

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (նախագահ), ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՅԱՆ (փոխնախագահ–գլխ. խմբագիր),
ԼԵՆՍԵՐ ԱՂԱԼՈՎՅԱՆ, ԱՐՄԵՆ ԱՄԻՐՅԱՆ, ԼԵՎՈՆ ԹԱՎԱԴՅԱՆ,
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ, ՌԱԴԻԿ ԿՈՍՏԱՆՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
ԼԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԳԱԳԻԿ ՂԱՋԻՆՅԱՆ,
ՀՐԱՆՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ,
ՅՈՒՐԻ ՇՈՒՔՈՒՐՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ, ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ,
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ, ԱՄԱՏՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2018

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Գլխավոր խմբագիր՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՅԱՆ

ԳԻՏԱԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԱՄՄԻԿ ԳՈՒԼԱԿՅԱՆ (պատ. քարտուղար),
ՅՈՒՐԻ ԱՀԱՐՈՆՅԱՆ, ՖՐԻԴԱ ԱՂԱՄԱԼՅԱՆ, ԼՈՒԻԶԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ,
ՄԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ, ԷՍԹԵՐ ԽԱՆԻԿՅԱՆ, ՀԵՆՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ,
ԱՐՈՒՍՅԱԿ ՂԱՐԻԲՅԱՆ, ԷԼՄԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ, ՎԱԼԻԴԱ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ,
ԱՆԻ ՄՈՒՇԵՂՅԱՆ, ԳԱՌՆԻԿ ՇԱԽԿՅԱՆ, ՍԱՀԱԿ ՍԱՀԱԿՅԱՆ, ՎԱՀՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

2 ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ 2

ԿԻՆՈ–ՖՈՒՔՍԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2018

ՀՏԴ 030 : 81՝ 374
ԳՄԴ 92 + 81.2–4
Հ 316

Տպագրված է պետական պատվերով

Հ 316 Հանրագիտական բառարան/
ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Գիտահրատարակչական խորհուրդ՝ Հ. Մ. Այվազյան (գլխ. խմբագիր) և ուրիշներ, –Եր., Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2018:
Հատոր 2, Կ(ինո)–Ֆ(ուքսին) – 1144 էջ:

ՀԱՏՈՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆԸ ՄԱՄՆԱԿՑԵԼ ԵՆ

Պատասխանատու քարտուղար՝ Հասմիկ Գուլակյան

Արվեստի և ճարտարապետության խմբագրությունը
Վալիդա Մելքումյան (վարիչ), ավագ գիտխմբագիրներ՝ Լուիզա Առաքելյան, Անի Մուշեղյան, Գառնիկ Շախկյան

Լեզվի և գրականության, մամուլի, փիլիսոփայության, կրոնի խմբագրությունը
Էսթեր Խանիկյան (վարիչ), ավագ գիտխմբագիր՝ Էլմիրա Մարգարյան, գիտխմբագիրներ՝ Մարինե Գրիգորյան, Արուսյակ Ղարիբյան

Պատմության խմբագրությունը
Սահակ Սահակյան (ավագ գիտխմբագիր), Վահե Մոսինյան (գիտխմբագիր)

Բնական և ճշգրիտ գիտությունների խմբագրությունը
Ավագ գիտխմբագիրներ՝ Յուրի Ահարոնյան, Ֆրիդա Աղամալյան, Սերգեյ Գալստյան, Հենրիկ Խաչատրյան, Լուսինե Կարապետյան, Վահրամ Սարգսյան

Բառացանկի, մատենագիտության և սրբագրության բաժինը
Գայանե Դրացյան (վարիչ), Օֆելյա Միքայելյան (ավագ գիտխմբագիր–ոճաբան), Ժանետա Սարգսյան (ավագ գիտխմբագիր–մատենագետ), Շուշանիկ Դուրգարյան (ավագ սրբագրիչ), Լուսինե Մաթևոսյան (սրբագրիչ) Լալա Խաչատրյան (համալրող խմբագիր)

Համակարգչային բաժինը
Աննա Ղազարյան (վարիչ), Գայանե Աղամալյան, Վահե Այվազյան, Մարինե Այունց, Մարինե Բեյբության, Աղավնի Ժամկոչյան, Անահիտ Յայլոյան

Պատկերների մշակումը՝ Անդրանիկ Գրիգորյանի

Կազմը՝ Արամ Ուռուտյանի

Տեքստը շարվել է Էդիկ Ղաբուզյանի «GHEA Narek Serif» տառատեսակով:

ISBN 978–5–89700–045–6

ՀՏԴ 030 : 81՝ 374
ԳՄԴ 92 + 81.2–4

© Հայկական հանրագիտարան. հրատ., 2018

Կ

ԿԻՆՈ Յուրայուկի (մոտ 870–մոտ 945), ճապոնացի բանաստեղծ: Առաջինն է կազմել և խմբագրել ճապոն. պոեզիայի «Կոկինվակայու» (905) անթոլոգիան: Հեղինակ է նաև թանկա ժանրի բանաստեղծությունների, «Ճանապարհորդական գրառումներ Տոսից» (936) քնար. ուղեգրության:

ԿԻՆՈ... (հուն.՝ kineo – շարժել), բարդ բառերի մաս. ցույց է տալիս կապը կինեմատոգրաֆիայի հետ (օր.՝ ***կինոարվեստ, կինոդրամատուրգիա, կինոթատրոն*** ևն):

ԿԻՆՈՄԲՎԵՏՍ, արվ-ի տեսակ, որի երկերն ստեղծվում են կյանքի իրական փաստերի կամ գեղ. կերպավորման հատուկ միջոցներով վերարտադրված գործողությունների կամ մուլտիպլիկացիայով արված պատմությունների կինոնկարահանմամբ: Կ. համադրում է գրկ-յան, թատերարվ-ի, կերպարվ-ի, երաժշտության գեղագիտ. հատկանիշները՝ միայն իրեն հատուկ արտահայտչամիջոցներով, որոնցից առավել կարևոր են պատկերի վավերալուսանկարչ. բնույթը և մոնտաժը:

ԿԻՆՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գիտ-յուն կինոյի մասին. ուսումնասիրում է ***կինոարվեստի*** տեսությունն ու պատմությունը, նաև դերասան. և ռեժ. արվ-ները, կինոդրամատուրգիայի, կինոերաժշտության, օպերատոր. արվ-ի, նկարչի և այլ ֆնդիրներ: Ընդգրկում է նաև կինոքննադատությունը:

ԿԻՆՈԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ, դրամատիկ. ստեղծագործության տարատեսակ, կինոնկարի գր. հիմքը՝ ***սցենարը***: Կ. ստեղծվում է կամ ինքնուրույն, կամ գր. որևէ երկի հիման վրա՝ նկատի ունենալով կինոյի առանձնահատկությունները: Լինում են տարբեր տեսակներ՝ կինովեպ, կինոպատմվածք, կինոնովել, կինոկատակերգություն ևն:

ԿԻՆՈԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, երաժշտարվ-ի տեսակ, կինոնկարի կարևոր բաղադրիչ: Կատարվում է և ցուցադրվում կադրում կամ ինչում կադրից դուրս: Հայկ. Կ-յան հիմնադիրն Արամ Խաչատրյանն է («Պեպո», 1935, «Հայֆիլմ»): Կ. ստեղծել են նաև Ա. Բաբաջանյանը, Ա. Ադեմյանը, Ղ. Սարյանը, Ա. Հարությունյանը, Է. Հովհաննիսյանը, Է. Միրզոյանը, Գ. Արմենյանը, Տ. Մանսուրյանը, Ռ. Ամիրխանյանը, Ս. Շաքարյանը և ուր.:

ԿԻՆՈԼՈԳԻԱ, (< հուն. kyon, սեռ. հոլ.՝ kynos – շուն և ***...լոգիա***), ***շնագիտություն***, գիտ-յուն շների մասին: Ժամանակակից ***շնաբուծության*** հիմքն է:

ԿԻՆՈՆԿԱՐ, ***ֆիլմ*** (անգլ.՝ film – կինոժապավեն), ժապավենի վրա վերարտադրված կինոստեղծագործություն: Կ-ի հիմն. տեսակներն են՝ գեղ. (խաղարկ.), հեռուստատես., մուլտիպլիկացիոն (անիմացիոն), փաստագր., վավերագր., գիտ., ուս. ևն:

ԿԻՆՈՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ԱՊԱՐԱՏ, ***կինոժապավենի*** վրա պատկերի և ձայնի գրանցման ապարատ: Ըստ տպման եղանակի՝ տարբերում են հպումային (լուսակայման ժամանակ կինոժապավենները կիպ սեղմվում են միմյանց) և օպտիկ. (պատճենահանվող պատկերն օպտիկ. համակարգի միջոցով պրոյեկտվում է կինոժապավենի լուսազգայուն շերտի վրա) Կ. ա-ներ:

ԿԻՆՈՊՐՈՅԵԿՏՄԱՆ ՄԱՐՔ, ***կինոպրոյեկտոր*** (< ***կինո...*** և լատ.՝ projectio – առաջաձգում), ***կինոցուցադրիչ***, էկրանին կինոնկարի պրոյեկտման սարք: Լինում են անշարժ և շարժ. Կ. ս-եր:

ԿԻՆՈՍԻՏՍ, Յոունձի (1914–2006), ճապոնացի դրամատուրգ, թարգմանիչ, թատրոնի տեսաբան: Հեղինակ է «Կոռունկի փետուրներ» (1949), «Օկինավա կղզին» (1963), որտեղ ռեալիզմը զուգակցել է բանահյուս. ավանդույթներին, Ռ. Զորգեի մասին «Օտտո անունով ճապոնացին» (1962), հակապատերազմ. թեմայով «Աստծու և մարդու միջև» (1972) պիեսներին, «Տոն միջօրեականում» (1978) պատմ. դրամայի, «Երկխոսություն դրամայով» (1968) աշխ-յան: Ճապոնիայի «Յոմիուրի» գր. մրց. (1978, 1984):

ԿԻՆՈՍՏՈՒԴԻԱ (< ***կինո...*** և իտալ.՝ studio – ուսումնասիրություն, պարապմունքների սենյակ-ստուդիա), ***կինոնկարներ*** արտադրող ձեռն., որտեղ զուգակցվում են գեղ. ստեղծագործ. (նկարահանող խումբ) և արտադրատեխ. գործընթացները: Կ. ապահովում է կինոնկարների ողջ ընթացքը՝ ***սցենարից*** մինչև ***ֆիլմապատճենումը***:

ԿԻՆՈՏԵԽՆԻԿԱ, 1. տեխնիկայի բնագավառ. մշակում է կինոնկարների արտադրման, բազմացման և ցուցադրման միջոցներ և մեթոդներ: Հիմնվում է օպտիկայի, մեխանիկայի, լուսատեխնիկայի, էլեկտրոնիկայի նվաճումների վրա: 2. ***Կինեմատոգրաֆիայում*** օգտագործվող տեխ. միջոցների համախումբ:

ԿԻՆՈՊՐԻՆԵԹ, նեմաթհելմինթների տիպի որդերի դաս: Երկ.՝ 0,2–1 ***մմ***: Հայտնի է լայնորեն տարածված մոտ 100 տեսակ: Ապրում են ծովերում՝ մինչև 400 ***մ*** խորներում:

ԿԻՆՏԱՈՒՐԻ, ***կինտոների մենապար***, վրաց. քաղաք. պար: Զևավորվել է XIX դ-ի վերջին (հետագայում ընդգրկվել է կովկաս. պարերի շարքում): Ռիթմը փոփոխական է, շարժումները՝ կտրուկ, շեշտված:

ԿԻՆՈՒԳԱՍՍ, Տեյնոսուկե (1896–1982), ճապոնացի կինոռեժ.: 1932-ին նկարահանել է ճապոն. առաջին ինչուն ֆիլմերից մեկը՝ «47 սամուրայներ», ապա՝ «Օսակայի դղյակի ամառային պաշարումը» (1937), «Տիրոջ մի գիշերը» (1948), «Դժոխքի դարպասները» (1954) ևն:

ԿԻՇ (Kiss), **Գիշ, Կիշյան** (ինագույն տոհմանունը՝ Ագոնց), Էռնե Օգոստինոսի (1799–1849), 1848–49-ի հունգ. հեղ-յան հայազգի գործիչ, զորավար, գեն. (1848): Իր գերդաստանի հարստությունը (6–7 մլն ֆորինտ) տրամադրել է հեղ-յանը: Պարտությունից հետո ձերբակալվել է և 12 այլ զորապետների (այդ թվում՝ հայազգի Վ. Լազարի) հետ գնդակահարվել:

ԿԻՇ (Kiš) Դանիլո (1935–1989), սերբ գրող, դրամատուրգ, թարգմանիչ: 1977-ից՝ Ֆրանսիայում: Ֆանտաստիկ. ռեալիզմի (կատակերգության և այլաբանության տարրերով) ներկայացուցիչ: «Ձեղնահարկ», «Սաղմոս 44-րդ» (երկուսն էլ՝ 1962՝ 1 գրքով), «Այգի, մոխիր» (1965), «Ավազաքար» (1972), «Բորիս Դավիդովիչի գերեզմանը» (1976), «Մեռյալների հանրագիտարան» (1983) վեպ-կոլաժներում պատկերել է XX դ-ի ողբերգ. իրականությունը:

ԿԻՇ (Kisch) Էգոն Էրվին (1885–1948), հրեա գերմանագիր գրող, լրագրող: Հիմնականում ապրել է Պրահայում: 1937–38-ին կռվել է Իսպանիայում, 1940–46-ին՝ վտարանդի: Հեղինակ է «Ասասնձ լրագրողը» (1924) հոդվածների, «Ցարեր, տերտերներ, բոլշևիկներ» (1927), «Ամերիկյան դրախտ» (1930), «Հիմովին փոխված Ասիան» (1932) էսսեների, ակնարկների ժող-ների, «Ցնցող նորությունների տոնավաճառ» (1942) ինքնակենսագր. երկի, կազմել է «Դասական լրագրության անթոլոգիան» (1924):

ԿԻՇ (Kiss) Իշտվան (1927–1997), հունգար քանդ.: ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի պատվ. անդամ (1978): Հունգարիայի ժող. նկարիչ: Հեղինակ է Դ. Դոժեի (1956–69), «Պեշտի և Բուդայի միավորումը» (1972) հուշարձանների (Բուդապեշտ):

ԿԻՇԿԻՆ Սերգեյ Տիմոֆեևիչ (1906–2002), ռուս մետաղագետ: ՌԳԱ ակադ. (1991, ԽՍՀՄ ԳԱ ակադ.՝ 1966-ից): ՌԽՖՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1957): Աշխ-ները վերաբերում են մետաղների ֆիզիկային և ամրությանը:

ԽՍՀՄ Պետ. (1942, 1949, 1968), Լենինյան (1984), ՌԴ Կառ-յան (2000) մրց-եր:

ԿԻՈ, կրկեսի արտիստների ընտանիք, ազգապարներ: **Էմիլ Թեոդորովիչ Կ.** (Գիրշֆելդ-Ռենարդ, 1894–1965), ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1958): Ազգապարտ. ներկա-

յացումների հեղինակ, կրկես. սարքավորումների կոնստրուկտոր: Որդիները՝ **Էմիլ Էմիլևիչ Կ.** (ծ. 1938), ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1990), **Իգոր Էմիլևիչ Կ.** (1944–2006), ՌԴ ժող. արտիստ (2003):

«ԿԻՈՂՈ ՅՈՒՄՐՆ», ճապոն. խոշորագույն տեղեկատվ. գործակալություն: Հիմնադրվել է 1945-ին Տոկիոյում:

ԿԻՈՏՈ (Kyoto), ք. Ճապոնիայի Հոնսյու կղզում, համանուն պրեֆեկտուրայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,47 մլն (2014): Կան էլեկտրոն., գաղտ. մեքենաշին., գուշնավոր մետաղաձուլության, տեքստիլ, քիմ., սննդի արդ-յան և այլ ձեռն-ներ: Զարգացած է ավանդ. արհեստագործությունը (բրոնզե, հախճապակու, ծիս. իրերի արտադր-յուն ևն): Զբոսաշրջության գլխ. կենտրոններից է: Կառուցվել է 792–794-ին, մինչև 1868-ը եղել է երկրի պաշտոն. մայրաքաղաքը: Հին Կ-ի ճարտ. հուշարձանները ներառված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխ. ժառանգության ցանկում:

ԿԻՉԱՆԻ ԱՆԱՊԱՏ, XII–XVIII դդ.-ի ճարտ. համալիր Արցախի Խաչեն գվո-ում (այժմ՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանի Կիչան գ.-ից մոտ 3 *կմ* հս-արլ.)՝ Խաչեն գետի ձախափնյա լ-շղթայի գագաթներից մեկի վրա: Բաղկացած է 2 եկեղեցուց, գավթից, սեղանատնից և կացարաններից: Հնագույն եկեղեցին (XII–XIII դդ.) միանավ է, պայտաձև խորանով, զույգ ավանդատներով: 2-րդ՝ համեմատաբար խոշոր եկեղեցին (1759) նույնպես միանավ է՝ թաղածածկ սեղանատնով:

ԿԻՊԱՐԻՍ, գեղանի պատանի հուն. դիցյան մեջ, Ապոլոնի սիրեցյալը: Ավանդության համաձայն՝ Կ., պատահմամբ սպանելով իր սիրելի եղնիկին, չի կարողացել մխիթարվել, և Ապոլոնը նրան ծառ է դարձրել:

ԿԻՊՀԱՐԴ (Kipphardt) Հեյնար (1922–1982), գերմանացի գրող: Հեղինակ է «Ալոիս Պիոնտեկի զարմանալի կարիերան» (1956) սոցիալ-քննադատ. ողբերգա-կատակերգության, «Գեներալի շունը» (1963), «Օպենհայմերի գործը» (1964), «Եղբայր Էյհմանը» (բեմ.՝ 1982) հակաֆաշիստ. թեմաներով պիեսների, «Մարտ» (1976) վեպի, որտեղ քննարկել է զանգված. հոգեբ-յան և անհատ. ենթագիտակցության հարցեր:

ԿԻՊՐԵՆՍԿԻ Օրեստ Ադամովիչ (1782–1836), ռուս. գեղանկարիչ, գծանկարիչ, դիմանկարի վարպետ: Դիմանկարներն աչքի են ընկնում շեշտված անհատականությամբ, ռոմանտիկ հուզաշխարհով («Ինքնանկար», մոտ 1809, «Ա. Չելիշչև», մոտ 1809 կամ 1810–11, «Ա. Պուշկին», 1827, ևն): Կ-ի «Դ. Ֆիլոսոֆովի դիմանկարը» (1826) ՀԱՊ-ում է:

ԿԻՊՐԻԱՆ (մոտ 1330–1406), 1375–80-ին՝ Կիևի, Ռուսաստանի և Լիտվայի մետրոպոլիտ: 1381-ին մեծ իշխան Դմիտրի Դոնսկոյը Կ-ին հրավիրել է Մոսկվա: 1382-ին արտաքսվել է: 1389-ից՝ Կիևի և Համայն Ռուսիո մետրոպոլիտ: Ռուս. հողերի միավորման հարցում եղել է մեծ իշխան Վասիլի I-ի կողմնակիցը: Հավանաբար մասնակցել է XIV դ-ի վերջ–XV դ-ի մոսկովյան տարեգրության պատրաստմանը: ՌՈՒՖ-ն Կ-ին սրբադասել է:

ԿԻՊՐԻԱՆՈՒ Սպիրոս (1932–2002), Կիպրոսի Հանրապետության նախագահ՝ 1977–88-ին: 1960–72-ին՝ ԱԳ նախարար: 1976-ի սեպտ–1977-ի օգոստ-ին՝ ներկայացուցիչների պալատի նախագահ:

ԿԻՊՐԻԱՆՈՒՍ ԿԱՐԹԱԳԵՆԱՑԻ (Cyprianus, 200 և 210-ի միջև–258), քրիստ. աստվածաբան, Կարթագենի եպս., Եկեղեցու հայր, նահատակ: Հռոմի Վալերիանոս կայսեր հետապնդումների ժամանակ ենթարկվել է մահապատժի: «Ընկածների» (հալածանքների պատճառով քրիստոնեությունից հրաժարվողների) հարցի շուրջ կարթագենացի և հռոմեացի աղանդավորների հետ բանավիճելիս գրել է «Եկեղեցու միասնության մասին» աշխ-ը: Հեղինակ է բազմաթիվ տրակտատների և նամակների:

ԿԻՊՐՈՍ, **Կիպրոսի Հանրապետություն**, պետություն Հվ-արմ. Ասիայում՝ համանուն կղզում: Տարածքը՝ 9,3 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,1 մլն (2013): Մայրաքաղաքը՝ ***Նիկոսիա***: Պետ. լեզուները՝ հուն. և թուրք.: Ինքնուրույն պետություն է հռչակվել 1960-ին: 1963-ին տեղի է ունեցել Կ-ի հույների և թուրքերի զինված ընդհարում: 1964-ին Կ-ում տեղակայվել է ՆԱՏՕ-ի ԶՈՒ ստորաբաժանում, 1974-ին Կ. են ներխուժել թուրք. ԶՈՒ և զավթել Կ-ի տարածքի 38 %-ը: 1976-ին թուրք–կիպրոս. վարչակազմն այդ տարածքում հռչակել է Կ-ի թուրք. դաշն. պետություն, 1983-ից՝ Հս. Կ-ի Թուրք. Հանրապետություն (ՀԿԹՀ, ճանաչել է միայն Թուրքիան): 2008-ից Կ-ի և ՀԿԹՀ-ի միջև գործում են սահմանագծի հատման (դեմարկացիոն) կանոնները: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Կազմված է 6 վարչ. մարզերից: Հավատացյալների մեծ մասն ուղղափառ քրիստոնյա է, կան նաև սուննի մահմեդականներ: Անդամակցում է ՄԱԿ-ին, ԵՄ-ին, ԱռտՀԿ-ին ևն: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով մոտ 27 հզ. ԱՄՆ դոլար է (2013): Արտահանում է ցիտրուսներ, դեղեր, ցեմենտ, հագուստ ևն, ներմուծում նավթ և նավթամթերք, մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ ևն: Դրամ. միավորը՝ ***եվրո***:


Մ. թ. ա. XV–XI դդ-ում Կ. գաղութացրել են աքքադացիները, IX դ-ում՝ փյունիկեցիները: Եղել է ***Կրետե–Միկենյան մշակույթի*** կենտրոններից: Մ. թ. ա. VIII դ-ի վերջին կղզին նվաճել է Ասորեստանը, VI դ-ի կեսերին՝ Աքեմենյան Պարսկաստանը: Մ. թ. ա. 333–323-ին Կ. մտել է ***Ալեքսանդր Մակեդոնացու*** պետության, 294–258-ին՝ Պտղոմեոսյան Եգիպտոսի կազմի մեջ, մ. թ. ա. 58-ին նվաճել է Հռոմը: Հռոմ. կայսրության բաժանումից հետո Կ. անցել է Բյուզանդիային (395), 648-ին գրավել են արաբները, 965-ին՝ Բյուզանդիան: 1191-ին կղզին գավթել են խաչակիրները: 1192-ին ստեղծվել է Կ-ի Թագավորությունը (գոյատևել է մինչև 1489-ը)՝ Լուսինյանների ավատ. տան գլխավորությամբ: 1489–1571-ին Կ. եղել է Վենետիկի տիրապետության տակ, 1571-ին նվաճել են թուրքերը: XIX դ-ում Կ-ում սկսվել է Հունաստանի հետ միավորվելու շարժում: 1878-ի անգլո-թուրք. գաղտնի համաձայնագրով Անգլիան նվաճել է Կ., 1914-ին՝ բռնակցել իրեն: 1925-ից անգլ. գաղութ էր: Կ-ի անկախության երաշխավորների (Հունաստան, Անգլիա, Թուրքիա՝ 1959-ի Ցյուրիխ-լոնդոնյան համաձայնագրով ճանաչվել է Կ-ի անկախությունը, բայց Անգլիային տվել է կղզում ռազմակայաններ (Ակրոտիրի և Դեկելիա) ունենալու, իսկ Հունաստանին և Թուրքիային՝ զորամասեր պահելու արտոնություն:

Հայերը Կ-ում բնակվել են հնագույն ժամանակներից: Դեռևս վաղ միջնադարում (IV–V դդ.) Կ-ում եղել են առանձին հայ պաշտոնյաներ, զինվորականներ, առևտրականներ: Հայկ. համայնքն այստեղ ձևավորվել է XII դ-ում: Կիլիկիայի հայոց թագավորության անկումից (1375) և Հայոց ցեղասպանությունից (1915–23) հետո Կ-ում հայերի թիվն ստվարացել է. ներկայում 4 հզ. է: Հիմնականում ապրում են Նիկոսիա, Լառնակա, Լիմասոլ, Ֆամագուստա, Պաֆոս ք-ներում:

ԿԻՊՐՈՍԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, հայ հոգևոր և մշակութ. կենտրոն Կիպրոս կղզում: Մեզ հասած առաջին ձեռագիրն Ավետարան է (1280, գրիչ՝ Պետրոս, Նոր Զուղայի մտնդ., № 33): Կիպրոսի Սբ Աստվածածին, Սբ Վարվառա, Սբ Սարգիս, Սբ Մակար եկեղեցիներում 1287, 1310, 1311, 1316, 1317, 1318-ին ձեռագրեր են ընդօրինակել Խաչատուր, Ստեփաննոս Գոյներիցանց, Սմբատ, Հովհաննես, Թորոս գրիչները: Հայտնի են նաև Գասպար Համթեցու ընդօրինակած Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն Կաթուղիկէից թղթոց»-ը (1426), Ստեփանոս Երեցի՝ Մաշտոցը (1641), Սարգիս Կրոնավորի՝ Ժողովածուն (1671), Հովհաննես եպս-ի՝ Շարականոցները (1670, 1674) ևն: 1947-ին Կիպրոսի հայոց առաջնորդարանի 60-ից ավելի ձեռագրեր տեղափոխվել են Աթենք: Կ. գ. կ-ի մատյանների մի մասն այժմ պահվում է Մտնդ-ում (ձեռ. № 242, 2022, 3412, 6262, 6845, 9116, 9450):


ԿԻՊՐՈՍԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻ, հնագույն բնիկ եկեղեցիներից: Հիմնադրել են Պողոս և Բառնաբաս առաքյալները: 3-րդ՝ Եփեսոսի տիեզ. ժողովում (431) ճանաչվել է ինքնուրույն (աֆտոկեֆալ): Թուրք զավթիչների, խաչակրաց արշավանքների, Կիպրոսի շրջափակման հետևանքով Կ. ու. ե. VII դ-ից պարբերաբար անկում է ապրել, 1940-ական թթ-ին ունեցել է 1 հոգևոր առաջնորդ: Ղեկ-ն արքեպիսկոպոսն է, որի նստավայրը Նիկոսիան է:

ԿԻՊՐՈՍՅԱՆ ԳԻՐ, Կիպրոս կղզու գծային վանկագիրը (մ. թ. ա. VI–IV դդ.): Գրի ուղղությունը՝ աջից ձախ (որոշ բացառություններով): Հնագույն արձանագրությունն ավանդված է մ. թ. ա. 2400–2100 թթ-ից:



ԿԻՍԱԱՆԱՊԱՏԱՅԻՆ ԳՈՐԾ ՀՈՂԵՐ, հողի տիպ կիսաանապատ. բարեխառն գոտում: Պարունակում է 0,3–2 % հումուս: ՀՀ-ում երբեմն անվանում են «դղեր»: Կազմում են ՀՀ տարածքի 5,8 %-ը (152 հզ. *հա*):

ԿԻՍԱԽՈՐԱՆԱՐԴԱՅԻՆ ՊԱՐԱԲՈԼ, *Նեյլի պարաբոլ*, 3-րդ կարգի հանրահաշվ. կոր, որի հավասարումը դեկարտյան կոորդինատներով $y^2 \le x^3$ է:



ԿԻՍԱԿԱՊԻԿՆԵՐ, պրիմատների կարգի կաթնասունների ենթակարգ: Մարմնի երկ.՝ 13–70 *սմ*, մեծ մասի պոչը երկար է: Ի տարբերություն կապիկների՝ գլխուղեղի մեծ կիսագնդերը հարթ են կամ սակավաթիվ ակոսներով ու գալարներով: Հայտնի է 9 ընտանիք՝ տուպայներ, երկարակրունկներ, լեմուրներ, ձեռնոտաններ, ինդրիներ, լորիներ ևն: Թվաքանակը նվազում է. 22 տեսակ գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ԿԻՍԱՀԱԶՈՐԴԻՉՆԵՐ, նյութեր, որոնց էլեկտրահաղորդականությունը սենյակ. ջերմաստիճանում միջանկյալ արժեք ունի մետաղների (10^6–10^4 *Օհմ*$^{-1}$ *սմ*$^{-1}$) և դիէլեկտրիկների (10^{-8}–10^{-12} *Օհմ*$^{-1}$ *սմ*$^{-1}$) էլեկտրահաղորդականությունների միջև: Կ-ի բնորոշ յուրահատկությունը ջերմաստիճանի ածի հետ նրանց տեսակարար էլեկտրահաղորդականության մեծացումն է: Ցածր ջերմաստիճաններում այն փոքր է: Կ-ի էլեկտրահաղորդականության վրա ազդում են նաև լույսը, ուժեղ մագնիս. դաշտը, արագ մասնիկների հոսքը և արտաքին այլ ազդակներ: Կ. կարող են լինել ինչպես բյուրեղ., այնպես էլ ամորֆ և հեղուկ նյութերը: Կ-ի շարքն են դասվում քիմ. որոշ տարրերի (սիլիցիում, գերմանիում, սելեն, թելուր, արսեն, ֆոսֆոր ևն) բյուրեղները, օքսիդների, սուլֆիդների, սելենիդների և թելուրիդների մեծ մասը, որոշ համաձուլվածքներ, մի շարք միներալներ ևն: Տես նաև ***Գոտիների տեսություն***:

ԿԻՍԱՀԱՂՈՐԴԻՉՆԵՐԻ ՖԻԶԻԿԱ, *կիսահաղորդիչների* հատկությունները ուսումնասիրող ֆիզիկայի բաժին: Կ. ֆ-ի հարցերով զբաղվել են Ժ. Ի. Ալֆերովը, Գ. Բուշը, Կ. Վազները, Ա. Վիլսոնը, Զ. Գանը, Ե. Գրոսսը, Ա. Ֆ. Իոֆֆեն, Ի. Ե. Տամմը, Յ. Ի. Ֆրենկը և ուր.:

ԿԻՍԱՀԱՂՈՐԴՉԱՅԻՆ ԴԵՏԵԿՏՈՐ, մասնիկները գրանցող և դրանց էներգիան չափող սարք: Կ. դ-ում ազդանշանը նշանակալիորեն ավելի մեծ է, քան *իոնացման խցիկում*: Կիրառվում է որպես γ-քվանտների և ծանր լիցքավորված մասնիկների սպեկտրաչափ:

ԿԻՍԱՀԱՂՈՐԴՉԱՅԻՆ ԼԱԶԵՐ, *լազեր*, որտեղ, որպես ակտիվ միջավայր, օգտագործվում է կիսահաղորդիչ բյուրեղ: Կ. լ-ի գործողությունը հիմնված է բյուրեղի թույլատրելի էներգետիկ. գոտիների միջև առաջացող ճառագայթ. քվանտ. անցումների վրա:

ԿԻՍԱՀԱՂՈՐԴՉԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ, էլ. սարքերի և գործիքների պատրաստման համար կիրառվող *կիսահաղորդիչներ*: Օգտագործվում են հիմնականում բյուրեղ. Կ. ն. (օր.՝ սիլիցիումի կամ գերմանիումի միաբյուրեղները ևն):

ԿԻՍԱՀԱՂՈՐԴՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐ, էլ. սարքեր, որոնց աշխ-ը հիմնված է *կիսահաղորդիչներում* տեղի ունեցող շարժընթացների վրա: Օգտագործում են էլ. տատանումների արտադրման, ուժեղացման և փոխակերպման (կիսահաղորդչ. դիոդ, տրանզիստոր, տիրիստոր), ազդանշանի (օպտրոն, լուսաոեզիստոր, լուսադիոդ, լուսատրանզիստոր ևն), էներգիայի մի տեսակը մեկ այլի փոխակերպման (ջերմատարր, ջերմաէլ. գեներատոր, արևային մարտկոց ևն), նաև պատկերների փոխակերպման, էլ. և մեխ. մեծությունների չափման ևն համար:

ԿԻՍԱՄԻՋԱԿԱՅՔ, x թվային առանցքի կետերի բազմություն, որոնք բավարարում են $a \le x < b$ կամ $a < x \le b$ անհավասարություններին: Նշանակում է համապատասխանաբար՝ [a, b) կամ (a, b]:

ԿԻՍԱՆԳԱՆԻ (Kisangani, մինչև 1966-ը՝ Ստենլիվիլ, Stanleyville), ք. Կոնգոյի ԺՀ-ում, նվինգստո Կոնգո գետի ափին, Չոպո պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 936 հզ. (2012):

ԿԻՍԱՆԴԻՐ, *կիսարձան, բյուստ* (ֆրանս.՝ buste, լատ.՝ busrum – դիակիզման տեղ, մահարձան), մարդու դեմքը, նաև մինչև կուրծքը կամ գոտկատեղը պատկերող քանդակ: Երևան է եկել Հին Եգիպտոսում և Հին Հունաստանում:

ԿԻՍԱՄՊԻՏԱԿԱՎԻԶ ՃԱՆՃՈՒՐՍ (Ficedula semitoncualata), ճանճորսների ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 13, թևերի բացվածքը՝ 23,5–24 *սմ*: Բնադրման շրջանում հասուն արուի մարմինը վերևից սև է՝ սպիտակ «կիսաօձիքով», ներքևից՝ սպիտակ: Ապրում է սաղարթախիտ անտառներում, պտղատու այգիներում, թփուտներում, չուի ընթացքում՝ գետաձորերում: Օգտակար է:

ԿԻՍԱՏՈՆ, երաժշտ. ինտերվալ, 2 աստիճանների միջև ամենակարճ տարածությունը 12-աստիճանանոց երաժշտ. համակարգում: Հավասարաչափ տեմպերացված լարվածքում օկտավայի 1/12 մասն է: Արլ. երաժշտության մեջ կան ինչյունների Կ-ից փոքր տարածություններ ևս: Տես նաև ***Տոն***:

ԿԻՍԱՈՒԼԻ, ուղղի կետերի բազմություն, որոնք այդ ուղղի ինչ-որ կետի մի կողմում են. եթե այդ կետը պատկանում է Կ-ին, ապա վերջինին անվանում են ճառագայթ:

ԿԻՍԱՓԱԿ ԾՈՎ, մասամբ մայրցամաքներով սահմանափակված և օվկ-ից կղզիներով կամ կղզեխմբով բաժանված ծովեր (օր.՝ *Օխոտի ծովը*):

ԿԻՍԵԼՅՈՎ Անդրեյ Պետրովիչ (1852–1940), մանկավարժ: Հեղինակ է «Հանրահաշիվ» (մաս 1, 29-րդ հրտ.՝ 1955, մաս 2, 42-րդ հրտ.՝ 1965), «Երկրաչափություն» (մաս 1, 21-րդ հրտ.՝ 1962, մաս 2, 25-րդ հրտ.՝ 1980) դաս. դարձած դպրոց. դասագրքերի, որոնք խորհրդ. շրջանում օգտագործվել են նաև հայկ. դպրոցներում:

ԿԻՍԵԼՅՈՎ Լև Լվովիչ (1936–2008), մոլ. ռուս կենսաբան, կենսաքիմիկոս: ՌԳԱ ակադ. (2000, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1979-ից): Աշխ-ները վերաբերում են գենային տեղեկույթի իրացման մոլ. մեխանիզմներին, բարձրակարգ օրգանիզմների գեների կառուցվածքին ու ֆունկցիաներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1979):

ԿԻՍԵԼՅՈՎ Նիկոլայ Անդրեևիչ (1928–2016), ռուս կենսաֆիզիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1991, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1979-ից): Աշխ-ները վերաբերում են էլեկտրոն. մանրադիտմանը և կենսբ. մակրոմոլ-ների (նուկլեինաթթուներ, սպիտակուցներ) պատկերների մշակմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1986):

ԿԻՍԻՎԱԴԱ, ք. Ճապոնիայի Հոնսյու կղզում: Բն.՝ 197 հզ. (2014):

ԿԻՍԿԻՄ, գվով Արմ. Հայաստանի Էրզրումի նահանգ-ում՝ Ճորոխ գետի միջին հոսանքի շրջանում: Կոչվել է կենտրոնի՝ Կիսկիմ գ-ի անունով: Կ. (մոտ 20 գյուղ) ընդգրկել է նախկին Բերդագարակ գվոզ-ի տարածքը: XX դ-ի սկզբին բնակիչների մեծ մասը մահմեդականացված (XVIII դ-ի վերջ) հայերի հետնորդներ էին: Կ-ի քրիստոնյա հայերը (հիմնականում՝ Կարմիրք, Կուդրաշեն, Մոխրկուտ գ-եր) տեղահանվել են 1915-ին:

ԿԻՍՄԱՅՈ (Kismaayo), ք-նվինգստ Սոմալիում, Ջուբալենդ չճանաչված պետության մայրաքաղաքն ու Ներքին Ջուբա պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 186 հզ. (2006):

ԿԻՍՅԱԿՈՎՍԿԻ Բոգդան (Ֆեոդոր) Ալեքսանդրովիչ (1868–1920), ռուս. փիլ., սոցիոլոգ և իրավագետ, նորկանտականության ներկայացուցիչ: Վ. Ա. ***Կիսյակովսկու*** եղբայրը: Ուկր. ԳԱ հիմնադիրներից և թղթ. անդամ (1919): Սշակել է իրավ. պետության գաղափարը: Հեղինակ է «Սոցիալական գիտությունները և իրավունքը: Սոցիալական գիտությունների մեթոդաբանության և իրավունքի ընդհանուր տեսության ակնարկներ» (1916) հիմնարար աշխ-յան:

ԿԻՍՅԱԿՈՎՍԿԻ Վլադիմիր Ալեքսանդրովիչ (1865–1952), ռուս. ֆիզքիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1929): Բ. Ա. ***Կիսյակովսկու*** եղբայրը: Աշխ-ները վերաբերում են էլեկտրաքիմիայի և մետաղների կոռոզիայի հարցերին: Զարգացրել է (Ի. Ա. ***Կաբլուկովի*** հետ) իոնների սոլվատացման մասին պատկերացումը:

ԿԻՍՏՈՏՈՒՐՈՎ Իվան (Քրիստոստուրյան Հովհաննես) Նիկոլայի (1910–1975), խորհրդ. բանակի տեխ. զորքերի գեն-մայոր (1954): Մասնակցել է ՀՄՊ-ին: 1955–1960-ին՝ ԽՍՀՄ ՊՆ-ում, 1960–68-ին՝ Քիմ. պաշտպ-յան ռազմ. ակադ-ի ֆակ-ի պետ:

ԽՍՀՄ Կարմիր աստղի (2), ՀՄՊ 1-ին և 2-րդ աստիճանների և Կարմիր դրոշի շքանշաններ:

ԿԻՍՈՒՄ, օրգանիզմների և բջիջների բազմացման եղանակ: Բակտերիաների Կ. իրականանում է լայնական միջնորմի առաջացմամբ: Միաբջիջ ջրիմուռների և կենդանիների Կ-մանը զուգընթաց կատարվում է նաև անսեռ բազմացում: Բազմաբջիջ օրգանիզմների բջիջների Կ. ընկած է հյուսվածքների աճման և սեռ. բազմացման հիմքում (տես նաև ***Մեյոզ***, ***Միտոզ***):

ԿԻՍՈՒՆԿՈ Գրիգորի Վասիլևիչ (1918–1998), ռուս ռադիոֆիզիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1991, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1958-ից): Սոց. աշխ. հերոս (1956): Աշխ-ները վերաբերում են ռադիոէլեկտրոնիկայի խնդիրներին: Լենինյան մրց. (1966):

ԿԻՎԻ (Kivi) Ստենվալ Ալեքսիս (1834–1872), ֆինն գրող: Հեղինակ է ռեալիստ. «Նումմի կոշկակարները» (1864), «Նշանադրություն» (1866) կատակերգությունների, գյուղ. կյանքը պատկերող «Յոթ եղբայրներ» (1870) վեպի: Կ-ի ստեղծագործությունը կապված է բանահյուսության հետ:

ԿԻՎԻ, 1. ակտինիդա ցեղի բույսերի ընդհ. և նրա պտղի անվանումը: Կ. անվանումն ստացել է իր պտղի անթև, գորշ, մազանման փետուրներով կիվի թռչունի արտաքին նմանության պատճառով: Պտուղը պարունակում է հսկայական քանակության վիտամիններ և հանք.նյութեր (1 Կ. պարունակում է 75 *մգ* C վիտամին): Լայնորեն տարածված է Չինաստանում, Հվ. Աֆրիկայում, Նոր Զելանդիայում: 2. **Կիվիանմանները**, անողնուղ թռչունների կարգ: Երկ.՝ 50–80 *սմ*: Մարմինը ծածկված է մազանման փետուրներով:

Հայտնի է 3 տեսակ՝ Նոր Զելանդիայի խիտ, խոնավ անտառներում: Վերցված է պահպանության տակ (1921–ից):

ԿԻՏԱՋԱՏՈ Սիրասարուրո (1852/53–1931), ճապոնացի մանրէաբան: Շիճուկաբուժության հիմնադիրներից: 1890–ին հայտնաբերել է (Է. *Բերինգի* հետ) պրկախտի տոքսինը և բացահայտել պրկախտի ու դիֆթերիայի տոքսինների հակածնային հատկությունները: 1894–ին հայտնաբերել է (Ա. Յերսենից անկախ) ժանտախտի հարուցիչը:

ԿԻՏԻՆԳ (Keating) Պոլ Ջոն (ծ. 1944), Ավստրալիայի վարչապետ և Ավստրալ. լեյբորիստ. կուս–յան առաջնորդ՝ 1991–96–ին:

ԿԻՏՈ (Quito), *Էկվադորի* մայրաքաղաքը և Պիչինչա պրովինցիայի վարչ. ու քաղ., տնտ. և մշակութ. կենտրոնը, Պիչինչա հրաբխի հվ. լանջին՝ 2818 *մ* բարձրյան վրա: Բն.՝ 2,6 մլն (2014): Ունի միջազգ. օդանավակայան: Կան տեքստիլ, սննդհամի, կաշվի–կոշիկի, քիմ. և արդ. այլ ձեռն–ներ: Հիմնադրել են իսպանացիները 1534–ին: 1978–ին Կ–ի պատմ. կենտրոնը ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ–ի համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում:

ԿԻՏՎԵ, ք. Ջամբիայում: Բն.՝ 527,8 հզ. (2010): Զարգացած են պղնձի արդյունահանումը և ձուլումը: Տրանսպորտ. հանգույց է: Կան էլեկտրասարքավորումների, թեթև, սննդհամի արտադր–յան և այլ ձեռն–ներ:

ԿԻՏՐՈՆ, **կիտրոնածառ**, սատապազգինների ընտանիքի ցիտրուսների ցեղի մշտադալար ծառ կամ թուփ: Հայտնի է միայն մշակության մեջ՝ Առաջավոր Ասիայում և Միջերկրածովայքում: Պտուղները պարունակում են կիտրոնաթթու, շաքար, C վիտամին: Բերքատվությունը՝ 200 *գ/հա*:

ԿԻՏՐՈՆԱԹԹՈՒ, եռհիմն օքսիթթու, $(HOOCCH_2)_2C(OH)COOH$: Ջրում լավ լուծելի անգույն բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 153,5°C: Կ. ստանում են մախորկայից և ածխաջրերի (շաքար, մրգահյութ) խմորումից, կիրառում են դեղագործ. և սննդի արդ–յան մեջ: Կ–ի աղերը՝ ցիտրատները, օգտագործում են բժշկության մեջ՝ արյան պահածոյացման համար:

ԿԻՏՐՈՆԱԽՈՏ, աղավնիճազգիների ընտանիքի թփերի և կիսաթփերի (հաճախ՝ խոտաբույսերի) ցեղ: Հայտնի է 200 տեսակ՝ հիմնականում Ամերիկայի արևադարձներում: Կ. կիտրոնայինը եթերայուղատու է: Մի քանի տեսակներ գեղազարդիչ են:

ԿԻՏՈՒՐ Արսեն (1883–1976), հաս. գործիչ, խմբ.: Բաղդադում կազմակերպել է (1916) «Տարագրելոց պաշտպանության մարմին» բարեգործ. ընկ–ը, օժանդակություն ցուցաբերել Իրաք տարագրված Մեծ եղեռնից փրկվածներին: 1937–57–ին (ընդմիջումով)՝ *«Արարատ»*–ի (Բեյրութ) խմբ.: Հեղինակ է «Հայ ազատագրութեան ճանապարհին» (1949), «Սրբագրեցէք յանուն արդարութեան» (1957), «Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան» (հ. Ա–Բ, 1962–63) և այլ աշխ–ների, «Յուշեր եւ փուշեր» (1956) գրքի:

ԿԻՐ, կրաքարի, կավճի և այլ կարբոնատ. հանքաքարերի թրծումից ու հետագա վերամշակումից ստացվող արտադրանքի ընդհ. անվանումը: Տարբերում են չհանգած Կ. (CaO), հանգած Կ. [$Ca(OH)_2$], նատրոնակիր (հանգած կրի և NaOH–ի խառնուրդը): Կ. օգտագործում են շին–յան և գղտ–յան մեջ:

ԿԻՐԱԿՈՍԶՈՎԱ Նատալյա Վարդանի (ծ. 1947), կինոռեժ.: 1983–92–ին՝ Կիևի կինոստուդիայի ռեժ.: Նկարահանել է «Վերադարձ», «Գավառային անեկդոտ» («Երիտասարդություն» կփ մրց.՝ 1983, 1987), «Վայրի լողափ» (Կինոքննադատների միջազգ. մրցույթի, «Զլատա Պրահա», Տոլյատիի «Վոլֆեստ» կփ դափնեկիր, 1991), «Սև լուսնի աստիճանը» (1992), «Դար տևող ճակատագիր» (2003), «Անտուն կինը» (2008) և այլ ֆիլմեր:

ԿԻՐԱԿՈՍ, **Կյուրակոս**, XIII դ–ի 1–ին կեսի գրիչ, մանրանկարիչ: Կիլիկիայի մանրանկարչության դպրոցի ներկայացուցիչ: Գործել է Դրազարկում և Հռոմկլայում: Պահպանվել են Կ–ի նկարազարդած Ճաշոցը (1239, ձեռ. № 53, ՎննՄՄ գրադարան) և Ավետարաններ (1244, ձեռ. № 69, ՎնտՄՄ մտնդ., 1248, ձեռ. № 8, Անթիլիասի Կիլիկիո հայոց կաթողիկոսարանի հավաքածու, 1249, ձեռ. № 7690, Մտնդ.): Հռոմկլայում առաջինը նրա գործերում են նկատվում արմ., մասնավորապես՝ խաչակիրների շրջանի գեղանկարչության տեխ. սկզբունքները:

ԿԻՐԱԿՈՄ, հավանաբար XIV դ–ի ճարտ.: Ըստ շին. արձանագրության՝ կառուցել է Մանազկերտ ք–ի պարիսպների հս–արլ. բուրգը (1334):

ԿԻՐԱԿՈՍ, XIV դ–ի մանրանկարիչ: Ղրիմի մանրանկարչության դպրոցի ներկայացուցիչ: Պահպանվել է Կ–ի նկարազարդած 2 ձեռագիր (Մտնդ., ձեռ. № 7408, ՎնտՄՄ մտնդ., № 904), նրան են վերագրվում ևս 2–ը (Մտնդ., ձեռ. № 7741, 8029), որոնց բնորոշ են ուրույն ոճը, գուն. նուրբ անցումները:

ԿԻՐԱԿՈՍ Ա ՎԻՐԱՊԵՑԻ, **Խորվիրապեցի** (1370–1448), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1441–43–ին: Կաթողիկոս ընտրվելուց (Էջմիածնի 1441–ի ժողովում) հետո հրապարակել է Կիլիկիայից Սբ Էջմիածին հայրապետ. աթոռի փոխադրությունն ավետող կոնդակ: Դժգոհելով ընտրությունից՝ Այունեցիները ժողով են գումարել (1443) և զահազրկել Կ. Ա Վ–ուն:

ԿԻՐԱԿՈՍ ԱՂԲԱԿԵՑԻ, **Կիրակոս Քահանա**, XIV դ–ի 1–ին կեսի գրիչ և մանրանկարիչ: Վասպուրականի մանրանկարչության դպրոցի ներկայացուցիչ: Գործել է Վասպուրականի Աղբակ ք–ում: Ընդօրինակել կամ պատկերազարդել է Ավետարաններ (1318–19–ի՝ ձեռ. № 4817, 1330–ի՝ ձեռ. № 2929, 1332–ի՝ ձեռ. № 9423, 1351–ի՝ ձեռ. № 2745, XIV դ–ի՝ ձեռ. № 5469) և ժող. (1352, բոլորը՝ Մտնդ.), 2 Ավետարաններ պահվում են Նոր Ջուղայում և Հալեպում:

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, **Գետիկցի, Արևելցի** (մոտ 1201/03–1271), պատմիչ, վրդ., րաբունապետ: 1236–ի գարնանը գերել են մոնղոլները (նրանց բանակում եղել է թարգմանիչ ու գրագիր), աշնանը փախել է և ապաստանել Նոր Գետիկում: 1255–ին Նիգ գվո–ի Վարդենիս գ–ում հանդիպել է *Հեթում Ա*–ին և գրառել նրա հայտնած տեղեկությունները: 1268–69–ին այցելել է Սիս: Մտերիմ է եղել նշանավոր ռազմաքաղ. գործիչների (Պռոշ, Քուրդ, Գրիգոր և այլ իշխաններ) և *Վարդան Արևելցու* հետ: Կ. Գ–ու գլխ. երկը «Հայոց պատմությունն» է, որը մեզ է հասել 47 ընդօրինակությամբ (31–ը՝ Մտնդ.), 1–ին հրտ–յունը՝ 1858–ին Սիսկվայում: Հեղինակ է նաև թղթերի (մեզ չեն հասել):

ԿԻՐԱԿՈՍ ԵՐԶՆԿԱՑԻ (1270–ական թթ.–1356), վրդ., աստվածաբան, մատենագիր, փիլ., մեկնիչ, բանաստեղծ, մանկավարժ: 1315–ից՝ րաբունապետ: Թողել է բազմաժանր գր. ժառանգություն՝ դավան., մեկնող. երկեր, խրատներ, ներբողներ, լուծմունքներ, չափածո գործեր, շարականներ («Նախերգան Տեառնընդառաջին», Մտնդ., ձեռ. № 2187, «Խրատ առ ուղղափառ հաւատացեալսն», Մտնդ., ձեռ. № 2542, 8727, ևն, Վնտ. մտնդ., ձեռ. № 241, «Թուղթ առ Կարնեցիս», Մտնդ., ձեռ. № 639, 750, 6608, ևն): Նրա գործերը մեզ են հասել բազմաթիվ ընդօրինակություններով:

ԿԻՐԱԿՈՍ ԹԱՎՐԻԶԵՑԻ, XIV դ–ի սկզբի մանրանկարիչ: 1330–ին Ջուղա՝ Ամենափրկիչ վանքի թանգարան, ձեռ. № 47/43), որը, ըստ մանրանկարների ոճի և պատկերագրության, ստեղծվել է Այունիքում: Կ. Թ–ու տերուն. պատկերներում նկատելի է զարդաձևերի առատությունը, գուն. համադրություններում՝ կարմրի և կապույտի գերակայությունը:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Ալբերտ Ավետիսի (ծ. 1942), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1990), պրոֆ. (1992): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006): Աշխ–ները վերաբերում են պինդ մարմնի և կիսահաղորդիչների տեսությանը: ՀՀ նախագահի մրց. (2014), ԿԳՆ (2000), ԵՊՀ (2002) ոսկե մեդալներ:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Ալեքսան Մաթևոսի (1918–2007), խորհրդ. կուս. և պետ. գործիչ: Եղել է ՀԽՍՀ կաթի և մսի արդ–յան նախարար (1965–70), ՆԽ նախագահի տեղակալ (1970–77), 1–ին տեղակալ (1977–86), ՀԽՍՀ Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության պետ (1986–88): ԽՍՀՄ Հոկտ. հեղ–յան, ՀՄՊ 2–րդ աստիճանի, Աշխ. կարմիր դրոշի (2) շքանշաններ:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Ալիսիա Գուրգենի (1936–2014), բանաստեղծուհի: ՀՀ ԳԱԱ պատվ. դ–ր (2007): 1971–ից՝ ԱՄՆ–ում: Գերտարած. կոչվող բանաստեղծ. շարժման (1969) հիմնադիրն է (1992): Գրել է նաև իսպ., իտալ., անգլ.: Հեղինակ է իսպ.՝ «Մեկ օր, հինգ ձայն» (1966), «Ժամանակի, սիրո, խաղաղության մեջ» (1970), «Սոխիրներից հետո և նամակ առ Հայաստան» (1972), «Մայրության քերթվածներ» (1989), հայ.՝ «Արմատ և էություն» (1967), «Նամակ առ Հայաստան» (1979), «Անդենական զրույցներ» (1992), անգլ.՝ «Սեր և մայրություն բառերից այն կողմ» (1992), «Արմատ բառից այն կողմ» (1992), եռալեզու՝ «Բանաստեղծություն և գերտարածություն» (1994), «Խաղաղություն քվանտային» (2005) և այլ ժող–ների: Իսպ. է թարգմանել Րաֆֆու «Խենթը» վեպը: Կ–ի որոշ գրքեր նկարազարդել է Պ. Պիկասսոն:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2012):

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Անահիտ Սերգեյի (ծ. 1947), մանկավարժ: Մանկավարժ. գիտ. դ–ր (2006): Աշխ–ները վերաբերում են դպրոցականների գեղագիտ. կրթ–յան համակարգում երաժշտ. արվ–ի ունեցած դերին:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Անուշավան Սարիբեկի (1919–1995), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1973), պրոֆ. (1976): Աշխ–ները վերաբերում են տնտ. պլանավորման տեսության, նյութատեխ. մատակարարման կատարելագործման, ինքնարժեքի, գնեգրի և պլանավորման հարցերին:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Արման Ջոնի (ծ. 1956), պատմաբան, դիվանագետ: Պատմ. գիտ.

դ–ր (1999): Զոն ***Կիրակոսյանի*** որդին: ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հունաստանում (1994–99), ԱՄՆ–ում (1999–2005) և Ավստրիայում ու Հունգարիայում (2011–ից): Աշխ–ները վերաբերում են Հայկ. հարցի դիվանագիտ–յան պատմությանը: Անգլ. թարգմանվել և հրատարակվել են Կ–ի «Հայկական ջարդեր 1894–96 թթ.» և «Բրիտանական դիվանագիտությունը և Հայկական հարցը» ուսումնասիրությունները:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Արշավիր (Արշալույս) Սիմոնի (ծ. 1940), գեղանկարիչ, խեցեգործ: Հեղինակ է խեցեգործ. («Անի», բոլորաքանդակ, 1985, «Կոմպոզիցիա», հարթաքանդակ, 1987, ևն), գրաֆիկ. («Պատշգամբում», 1984, «Հանգիստ», «Լողացող կանայք», երկուսն էլ՝ 1986, ևն) գործերի, գունանկարների («Աստղիկ», 1983, «Ինքնանկար», 2003, ևն):

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Բաղալ (Սերգեյ) Երվանդի (ծ. 1939), մանկաբույժ–նեֆրոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (1993), պրոֆ. (1997): Աշխ–ները վերաբերում են սուր և քրոնիկ. երիկամաբորբերի, երիկամաավազանաբորբերի և երիկամների ախտահարմամբ ուղեկցվող պարբեր. հիվանդության բուժման խնդիրներին: ՌԴ մանկաբույժների ընկերակցության անդամ (1997–ից):

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Գագիկ Տիգրանի (ծ. 1955), ճարտարագետ–էլեկտրիկ: Տեխ. գիտ. դ–ր (2000): Աշխ–ները վերաբերում են էկոլոգիատնտ. կիրառ. հիմնախնդիրների լուծմանը, մասնավորապես՝ հանքամշակման թափոնների և ջր. պաշարների դեպքում կորպորատիվ հաշվող. ցանցերի մշակմանն ու ներդրմանը: ՀամԼԿԵՄ մրց. (1987):

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Գեղամ Եղիշի (1931–2010), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1997), պրոֆ. (2001): Գրիգոր ***Կիրակոսյանի*** եղբայրը: Հեղինակ է «Հայաստանը Լանկ–Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում (1386–1500)» (1997) և այլ աշխ–ների: Զբաղվել է նաև Սասունի պատմությամբ:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Գրիգոր Եղիշի (ծ.1936), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1989), պրոֆ. (1991): Գեղամ ***Կիրակոսյանի*** եղբայրը: 1993–2006–ին՝ ԵՊՏԻ տնօրեն: Աշխ–ները վերաբերում են անձն. պահանջմունքների բավարարման, աշխատուժի վերարտադր–յան և շուկայական տնտ–յան հարցերին: ՀՀ տնտեսագետների միության նախագահ (1999–ից): ՀՀ «Անանիա Շիրակացի» (2000) և «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1–ին աստիճանի (2011) մեդալներ:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Զավեն Թադևոսի (ծ. 1936), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1962): 1979–94–ին՝ ԱՄՆ ՊՆ ավիատիեզ. ընկ–յան պաշտպ. տեխնոլոգիաների (ՊՏ–ներ) մշակումների գիտ. տնօրեն, 2005–ից՝ ՀՀ–ում իր հիմնադրած գիտաարտադր. խորհրդի նախագահ: Աշխ–ները վերաբերում են տարր. մասնիկների հայտնաբերման, բարձր էներգիաների ֆիզիկայի, գերզգայուն սարքավորումների և սարքերի, ՊՏ–ների մշակման, խիտ պրոտոն. և էլեկտրոն. արագացուցիչների, միջուկ. էներգետիկ. աղբյուրների ստացման, ռադիոակտիվ ու միջուկ. թափոնների մշակման հարցերին:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Լուսինե Պարույրի (ծ. 1946), դերասանուհի: ՀՀ վաստ. արտիստ (2007): 1969–ից՝ ԵԴԹ դերասանուհի (Նվարդ՝ Ե. Օտյանի «Սեր և ծիծաղ», Կին՝ Ս. Ստրատիևի «Ավտոբուս», Սիրարփի՝ Ժ. Հարությունյանի «Քո վերջին հանգրվանը», Լուկա՝ Բ. Շոուի «Շոկոլադ ուտող զինվորը», Մայր՝ Ա. Ե. Մակայոնոկի «Հալածված առաքյալը», ևն): Նկարահանվել է «Հեծյալը, որին սպասում էին», «Ավտոբուս», «Լաբիրինթոս» և այլ ֆիլմերում: ՀԹԳՄ «Արտավազդ» մրց. (2010):

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Լևոն Մարտինի (1928–2009), լրագրող, գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1981), պրոֆ. (2003): Հեղինակ է «Մարդը և սխրանքը, հայ պատերազմական արձակի պաթոսը» (1975), «Անհատի կոնցեպցիան և գրականության հերոսը» (1982), «Բեկումնային պահին. Վահան Տերյանի հրապարակախոսության մասին» (1989, բոլորն էլ՝ ռուս.) և այլ աշխ–ների:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Պոլ Մանուկի (1926–1993), գեղանկարիչ: Հեղինակ է դիմանկարների, բնանկարների, թեմատիկ կոմպոզիցիաների («Արաքսի դիմանկարը», «Այգաբաց», «Քաղաք», «Սպասում», «Ընտանիք» ևն): Կ. պատկերել է նաև աստանդական հայության կյանքն ու կենցաղը («Դեր Զոր», «Գաղթ», «Կարպետագործը»), որոնց բնորոշ են հյութեղ երփնագիրը, գույնի՝ նուրբ զգացողությունը: ՀՆՄ Մ. Սարյանի անվ. մրց. (1981):

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Զոն Սահակի (1929–1985), պետ. գործիչ, պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1966), պրոֆ. (1969): Արման ***Կիրակոսյանի*** հայրը: 1975–85–ին՝ ՀԽՍՀ ԱԳ նախարար: Աշխ–ները վերաբերում են Հայկ. հարցի, Հայոց ցեղասպանության, հայ ազգ–ազատագր. շարժման խնդիրներին: Հեղինակ է «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում. 1828–1923 թթ.» (1972) ժող–ի, «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» (հ. 1–2, 1982–83, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1985, հետմահու) երկի ևն:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Ռազմիկ Մակարի (ծ. 1937), մեխանիկոս: Տեխ. գիտ. դ–ր (1987), պրոֆ. (1990): Առաջարկել է անիզոտրոպ նյութերից պատրաստվող միաշերտ իդեալ. պլաստիկ սալերի լավարկային նախագծման «հավասարածոման սկզբունք»:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Սահակ Ղուկասի (1895–1970), լրագրող, խմբ.: Բանասիր. գիտ. թեկնածու (1947): Կուսիրատի խմբ., ապա՝ տնօրեն, Հայպետհրատի բաժնի վարիչ:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Վահագն Պերճի (ծ. 1948), ստոմատոլոգ–օրթոպեդ: Բժշկ. գիտ. դ–ր (1990), պրոֆ. (1991): 1978–ին Կենտր. զինվ. հոսպիտալում հիմնադրել է դիմածնոտ. բարդ պրոթեզավորման, 1996–ին՝ Հայ–ֆրանս. ատամնատեխ. և ատամնաբուժ. ուսուցման կենտրոններ: Աշխ–ները վերաբերում են մեծահասակների ատամնածնոտ. անկանոնությունների, պրոթեզավորման առանձնահատկություններին, մետաղախեցային պրոթեզավորմանը:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Վլադիմիր Աղասու (ծ. 1936), գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1987), պրոֆ. (2005): Հեղինակ է «Ռուբեն Սևակ. կյանքը և ստեղծագործությունը» (1972), «Արևմտահայ բանաստեղծությունը. 1890–1907 թթ.» (1985), «Մենագրույց նահատակ բանաստեղծի հետ» (2005), «Հայկական ռեալիզմի տեսության և պատմության հարցեր» (1987) և այլ աշխ–ների: «Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն» (հ. 1, 1869–1908, հ. 2, 1909–14, 2010, 2016) գրքի պատ. խմբագիր:

ԿԻՐԱԿՈՍՈՎ Վիլեն Արտեմի (ծ. 1927), կոնստրուկտոր, կրիոգեն. ինքնաթիռաշինության հիմնադիրներից: Զբաղվել է ինքնաթիռի անձնակազմի վթար. փրկության (կատապուլտ) համակարգի մշակման հարցերով: Մասնակցել է Տու–16, Տու–144 ինքնաթիռների փորձարկմանը, Տու–155 (կրիոգեն. վառելիքով աշխատող շարժիչով) ինքնաթիռի ստեղծման ու փորձարկման աշխ–ներին: ՌԴ «Ժողովուրդների բարեկամության» շքանշան (1993):

ԿԻՐԱՆՑ ՎԱՆՔ, XIII դ–ի ճարտ. համալիր ՀՀ Տավուշի մարզի Կիրանց գ–ից արմ.: Բաղկացած է աղյուսաշեն 3 եկեղեցուց, սրահ–գավիթներից, սեղանատնից, բնակելի և տնտ. շենքերից, կամարակապ դարպասով պարսպից: Գլխ. եկեղեցին 1 զույգ մույթով գմբեթավոր կառույց է, ներսում վրաց. մակագրություններով որմնանկարները վկայում են, որ վանքը պատկանել է հայ քաղկեդոնականներին: Միւտքերի (արմ–ից և հվ–ից) առջև կամարակապ լայն բացվածքներով գավիթ–սրահներ են: Գլխ. եկեղեցուն հս–ից և հվ–ից կից են 2 միանավ դահլիճ եկեղեցիներ: Արմ–ում կիսամշակ բազալտից կառուցված սեղանատունն է:

ԿԻՐԱՌ–ԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ, ստեղծագործ. մի շարք ճյուղեր ընդգրկող արվ–ի ոլորտ. ստեղծում է հիմնականում կենցաղ. գեղ. առարկաներ: Ճյուղերից են դեկորատիվ–կիրառ. արվ–ը, ժող. ստեղծագործությունը, գեղ. արդ–յունը:

ԿԻՐԱՌ–ԱԿԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ, սոցիոլոգիայի բաժիններից. ուսումնասիրում է անհատների, սոցիալ. խմբերի, դասակարգերի գործունեության մեջ հաս. ընդհ. օրինաչափությունների դրսևորման ձևերն ու գործողության մեխանիզմները տարբեր պատմ. պայմաններում և իրադրություններում: Կ. ս. ներառում է մասնակի (հատուկ) սոցիոլոգ. տեսությունները («աշխատանքի սոցիոլոգիա», «ընտանիքի սոցիոլոգիա», «գյուղի սոցիոլոգիա», «անհատի սոցիոլոգիա» ևն) և որոշակի սոցիոլոգ. հետազոտությունները: Կ. ս. հետազոտվող երևույթը դիտում է որպես մարդկային հավաքականությունների գործունեության արդյունք՝ այն պայմանավորող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ամբողջության մեջ: Հայաստանում Կ. ս–ի վերաբերյալ ուսումնասիրություններ են կատարում ԵՊՀ սոցիոլոգիայի, փիլ–յան և հոգեբ–յան ֆակ–ներում, ՀՀ ԳԱԱ փիլ–յան և իրավունքի ինստ–ի կիրառ. սոցիոլոգիայի լաբորատորիայում, ՖԿՀՊԻ–ում, ինչպես նաև Կ. ս–ի հաս. հիմունքներով գործող կենտրոններում:

ԿԻՐԵԵՎ Նիկոլայ Ալեքսեևիչ (1841–1876), Սլավոն. բարեգործ. կոմիտեի անդամ (1868–ից): Մասնակցել է 1876–78–ի սերբա–չեռնոգորա–թուրք. պատերազմներին: Գլխավորել է բուլղ. և սերբ. կամավորների ջոկատները: 1876–ի հուլիսին ղեկավարել է թուրք. ամրությունների գրոհը (Բելգրադից հվ). զոհվել է մարտում:

ԿԻՐԵԵՎ Ռուսլան Տիմոֆեևիչ (ծ. 1941), ռուս գրող: «Հաղթողը», «Գովաբանություն» (երկուսն էլ՝ 1980), «Նախապատրաստական տետր» (1981) վեպերում կերտել է ժամանակակից գործարար հակահերոսի երգիծ. կերպարը: «Ռայա Շեպունովան և այլ մարդիկ» (1983) ժող–ում,

«Հեռավոր քաղաքի տանիքները» (1986), «Տղան եկել է» (1994) վեպերում փնտրել է բարոյական արժեքների մարմնավորման ուղիները: Կ. հեղինակ է նաև համաշխ. գրկ-յան դասականներին նվիրված «Սիրո մուսաներ» (1996) գեղ-վավերագր. նովել-ների շարքի, «Սոդոմցի Ղովտը» (2001), «Իմ քույր մահը» (2002), «Պատնասի աստվածուհիները» (2005), «Խրախճանք՝ միայնակ» (2012) և այլ երկերի:

ԿԻՐԵՆԻ ԴՊՐՈՑ, Կիրենաիկներ (մ. թ. ա. IV դ.), հինհուն. փիլ-յան սոկրատեսյան դպրոցներից, որը հիմնադրել է Կիրենացի Արիստիպոսը: Հետևող. հեդոնիզմի դիրքերից զարգացրել է Սոկրատեսի սկզբունքները:

ԿԻՐԵՆՍԿԻ Լեոնիդ Վասիլևիչ (1909–1969), ռուս. ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1968, թղթ. անդամ՝ 1964–ից): Սոց. աշխ. հերոս (1969): Կրասնոյարսկի ֆիզիկայի ինստ-ի (1970–ից՝ Կ–ու անվ.) հիմնադիր-տնօրեն (1957–ից): Աշխ-ները վերաբերում են մագնիսականությանը, ֆիզտեխ. մեթոդ-ներով կենսասինթեզի կառավարման հիմնախնդրին: Սիբիրում ստեղծել է մագնիսաբանների գիտ. դպրոց:

ԿԻՐՋԱ, (անգլ.՝ kersey, Անգլիայի համա-նուն գյուղի անունից, որտեղ բուծել են ոչխարի հատուկ ցեղ, որի բրդից գործել են ամուր գործվածք), խիտ, ամուր, բազ-մաշերտ բամբակե գործվածք՝ ոլորած նուրբ մանվածքից: Փոխարինում է կաշ-վին, օգտագործում են ռետինածծված շարժափոկերի, երկարաճիտ կոշիկների, մասնավորապես՝ զինվ., պատրաստման համար, ինչպես նաև պոլիգրաֆիայում:

ԿԻՐԺՆԻՑ Դավիդ Աբրամովիչ (1926–1998), հրեա ֆիզիկոս-տեսաբան: ՌԳԱ թղթ. անդամ (1991, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1987–ից): Աշխ-ները վերաբե-րում են տես. միջուկ. ֆիզիկային, նյութի ծանրագույն վիճակի տեսությանը, աստ-ղաֆիզիկային:

ԿԻՐԻԲԱՏԻ (հիլբերտցիներ, ինքնանվա-նումը՝ ի-կիրիբատի, տունգարու), մելա-նեզ. ժողդ, ***Կիրիբատիի*** հիմն. բնակչութ-յունը: Ընդհ. թիվը՝ 86 հզ. (2005): Լեզուն՝ կիրիբատի: Հիմնականում կաթոլիկ և բողոքական են, շուրջ 8 %-ը՝ մորմոններ:

ԿԻՐԻԲԱՏԻ (Kiribati), **Կիրիբատիի Հան-րապետություն**, պետություն Խաղաղ օվկ-ի Գիլբերտի, Լայն և Ֆենիքս կղզի-ներում: Տարածքը՝ 812 *կմ*^{2}, բն.՝ 103 հզ. (2013): Մայրաքաղաքը՝ ***Հարավային Տա-րավա*** (Բահրակի): Պետ. լեզուները՝ անգլ. և կիրիբատի: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախա-գահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Բաժանված է 3 կղզե-խմբի, որոնք չունեն վարչ. գործառույթ: Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է, կան նաև բողոքականներ: Անդամակցում է ՄԱԿ-ին: Աշխարհի ամենաթույլ զարգա-ցած երկրներից է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով մոտ 1,6 հզ. ԱՄՆ դոլար է (2013): Արտա-հանում է կոպրա, ձկնեղեն ևն, ներմուծում՝ նավթ, մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, կիսապատրաստվածքներ ևն: Դրամ. միավորը՝ ավստրալ. դոլար:

1892-ից Մեծ Բրիտանիայի գաղութ. տիրույթն էր. անկախացել է 1979-ին: Կ-ի կղզիները հայտնաբերել են իսպանա-ցիները 1606-ին: 1892-ին դարձել է Մեծ Բրիտանիայի պրոտեկտորատ, ապա՝ գաղութ: Կ-ի որոշ կղզիներ ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան օգտագործել են մի-ջուկ., 1960-ական թթ-ին՝ նաև ջերմամի-ջուկ. զենքերի փորձարկումների համար: 1979-ի հուլիսի 12-ից անկախ պետութ-յուն է: 1999-ին անդամակցել է ՄԱԿ-ին: 2003–16-ին երկրի նախագահը Անոտե Տոնգն էր, 2016-ից՝ Տանետի Մամաուն:

ԿԻՐԻԼ ԵՎ ՄԵԹՈԴԻ, սալոնիկցի (Սո-լոն) եղբայրներ, սլավոն. լուսավորիչներ, սլավոն. այբուբենի ստեղծողները, քրիս-տոնեության քարոզիչներ (Վ.Ելիկոմորավ. պետության իշխան Ռոստիսլավը նրանց հրավիրել է Կ. Պոլսից), ժամագրքերը հուն-ից սլավոն-ի առաջին թարգմանիչ-ները: ***Կիրիլը*** (մինչև 869-ին կուսակրոն-նություն ընդունելը՝ Կոստանդին, մոտ 827–869) և ավագ եղբայր ***Մեթոդին*** (մոտ 815–885) հիմնադրել են հինսլավոն. գիրն ու գրկ-ը:

ԿԻՐԻԼԻՆ Վլադիմիր Ալեքսեևիչ (1913–1999), քաղ. գործիչ, էներգետիկայի և ջերմաֆիզիկայի բնագավառի գիտնա-կան: ՌԴ ակադ. (1991, ԽՍՀՄ ԳԱ ակադ.՝ 1962-ից, փոխնախագահ՝ 1963–65-ին): 1955–62-ին՝ ԽՄԿԿ ԿԿ բաժնի վարիչ, 1965–80-ին՝ ԽՍՀՄ ՆԽ նախագահի տե-ղակալ և ՆԽ գիտ-յան և տեխնիկայի պետ. կոմիտեի նախագահ:

ԽՍՀՄ Պետ. (1951, 1976), Լենինյան (1959) մրց-ներ:

ԿԻՐԻԼԻՑՅԱ, սլավոն. 1-ին երկու գրատե-սակներից (***գլագոլիցայի*** հետ) մեկը (IX դ-ի սկիզբ–XX դ-ի վերջ): Հիմնադիրը Կիրիլ լուսավորիչն է (տես ***Կիրիլ և Մեթո-դի***): Հիմքում հուն. կանոնագրությունն է:

ԿԻՐԻՉԵՆԿՈ Ֆեոդոր Գրիգորևիչ (1904–1988), ռուս ընտրասերումնաբան: ՀամԳԳԱ ակադ. (1956): Սոց. աշխ. հերոս (1958): Ստացել է ցորենի բարձր բերքատու սորտ: ԽՍՀՄ Պետ. (1949), Լենինյան (1959) մրց-ներ:

ԿԻՐԼՅԱՆ (Կիրլիան) Սեմյոն Դավթի (1898–1978), ֆիզիոթերապևտ, լուսանկա-րիչ: ՌԽՖՍՀ վաստ. գյուտարար: Կնոջ՝ Վ. Խ. Լոտոցկայայի (Կիրլիան) հետ մշակել է լուսանկարահման նոր՝ գազապարպու-մային եղանակ, որը հնարավորություն է տալիս դիտարկելու և սևեռելու ատոմնե-րի ու մոլ-ների լուսարձակումը: Եղանակն այժմ կոչվում է «Գազապարպումային լուսանկարչություն՝ ըստ Կիրլիանի», «Կիրլիանագրություն» կամ «Կիրլիան էֆեկտ»: Կրտսեր եղբայրը՝ **Միխայիլ Կ.**, ջութակահար, պրոֆ., եղել է Կրասնո-դարի երաժշտ. ուսումնարանի տնօրեն:

ԿԻՐԽԵՆՇՏԵՅՆՍ (Kirchensteins) Ավգուստ (1872–1963), լատվիացի մանրէաբան, պետ. գործիչ: Լատվ. ԽՍՀ ԳԱ ակադ. (1946, փոխնախագահ՝ 1951–58-ին): Սոց. աշխ. հերոս (1957): 1940-ին՝ Լատվ. ԽՍՀ վարչապետ և Լատվիայի նախագահ, 1940–52-ին՝ ԳԽ նախագահ, միաժամա-նակ, 1946-ից՝ Լատվ. ԽՍՀ ԳԱ մանրէա-բանության ինստ-ի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են մանրէաբանությանը, վիտամինաբանությանը:

ԿԻՐԽՈՖ (Kirchhoff) Գուստավ Ռոբերտ (1824–1887), գերմանացի ֆիզիկոս: Բեռլի-նի ԳԱ ակադ. (1874), Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1862): 1847-ին լուծել է ճյուղավորված էլ. շղթաներում հոսանք-ների բաշխման խնդիրը (տես ***Կիրխհոֆի կանոններ***): Ռ. Վ. ***Բունզենի*** հետ դրել է սպեկտր. վերլուծության հիմքը (1859), որի միջոցով հայտնաբերել են ցեզիումը (1860) և ռուբիդիումը (1861): 1858-ին ստացել է քիմ. ռեակցիայի ջերմ. էֆեկտի մեծության՝ ջերմաստիճանից կախման հավասարու-մը (***Կիրխհոֆի հավասարում***): 1859-ին ձևակերպել է ջերմ. ճառագայթման հիմն. օրենքներից մեկը (***Կիրխհոֆի ճառագայթ-ման օրենք***) և ֆիզիկա ներմուծել «բա-ցարձակ սև մարմին» հասկացությունը: 1860-ին ճշգրիտ բացատրել է Արեգակի սպեկտրում մութ շերտերի (***ֆրաունհոֆեր-յան գծեր***) առաջացման պատճառը:

ԿԻՐԽՈՖ (Գոտլիբ) Կոնստանտին Սի-գիզմունդ (1764–1833), գերմանացի քիմիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1812–18): Բացահայտել է օսլայի փոխա-կերպումը շաքարի՝ նոսր թթուների (1811) և ամիլազ ֆերմենտի ազդեցությամբ (1814): Կատալիտիկ ռեակցիաների քի-միայի հիմնադիրն է:

ԿԻՐԽՈՖԻ ԿԱՆՈՆՆԵՐ, 1-ին կանոն. հաղորդալարերի ճյուղավորման յուրա-քանչյուր կետում (հանգույց) հոսանքների ուժերի հանրահաշվ. գումարը հավասար է զրոյի: **2-րդ կանոն.** հաղորդիչների բարդ ցանցում կամայականորեն առանձնաց-ված յուրաքանչյուր փակ կոնտուրի բոլոր տեղամասերի լարման անկումների հան-րահաշվ. գումարը հավասար է այդ կոն-տուրում էլշու-ների հանրահաշվ. գումա-րին: Ձևակերպել է Գ. Ռ. ***Կիրխհոֆը*** (1847):

ԿԻՐԽՈՖԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄ, քիմ. ռե-ակցիայի ջերմ. էֆեկտի կախվածութ-յունը ջերմաստիճանից արտահայտող առնչություն: Հնարավորություն է տալիս կամայական ջերմաստիճանում հաշվել ռեակցիայի ջերմ. էֆեկտը՝ թերմոդինա-միկ. տեղեկատուներում բերված առա-ջացման ստանդարտ ***էնթալպիաներով*** (ջերմապարունակություններ): Առաջար-կել է Գ. Ռ. ***Կիրխհոֆը*** (1858):

ԿԻՐԽՈՖԻ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ՕՐԵՆՔ, ջերմ. ճառագայթման հիմն. օրենքներից, որի համաձայն՝ որևէ մարմնի ճառա-գայթների առաքման և կլանման ունա-կությունների հարաբերությունը կախված չէ տվյալ մարմնի բնույթից և հավասար է բացարձակ սև մարմնի ճառագայթման ունակությանը՝ նույն ջերմաստիճանում: Հայտնաբերել է Գ. Ռ. ***Կիրխհոֆը*** (1859):

ԿԻՐԽՇԼԵԳԵՐ (Kirchschläger) Ռուդոլֆ (1915–2000), Ավստրիայի դաշն. նախա-գահ՝ 1974–86-ին: Ընտրվել է Ավստրիա-յի սոց. կուս-յան առաջարկությամբ: 1970–74-ին՝ ԱԳ նախարար:

ԿԻՐԿԵ (Kirke), կախարդուհի հուն. դից-յան մեջ: Կ. Ոդիսևսին խարդախությամբ մեկ տարի պահել է իր կղզում, իսկ ուղեկից-ներին դարձրել է խոզ: Փխբ. իմաստով՝ նենգ, գայթակղիչ կին:

ԿԻՐԿՈՎ, Վասիլ (1870–1931), բուլղար դե-րասան: 1892–1926-ին աշխատել է «Ար-ցունք և ծիծաղ» թատրոնում (Սոֆիա, 1904-ից՝ Ժող. թատրոն): Ռոմանտիկ, ուղղության նշանավոր ներկայացուցիչ՝ բուլղ. թատրոնում (Համլետ՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», Ֆերդինանդ՝ Ֆ. Շիլլերի «Սեր և խարդավանք», ևն):

ԿԻՐՃ (տարբեր լեզուներով՝ **կանիոն**), խոր գետահովիտ, հաճախ՝ ուղղահայաց լանջերով և նեղ հատակով գետի հունով: Խորությամբ հայտնի է Կոլորադո գետի Մեծ կանիոնը, ամենաերկարը Գրեն-լանդիայի Մեծ կանիոնն է: ՀՀ-ում Կ-եր կան Հրազդան, Դերեդ, Արփա, Ազատ, Քասաղ, Որոտան գետերի միջին հո-սանքների շրջանում:

ԿԻՐՅՈՒԽԻՆ Վլադիմիր Իվանովիչ (1922–2003), կիրառ. էներգետիկայի բնագավա-

ռի ռուս գիտնական: ՌԳԱ ակադ. (1992, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1987–ից): Աշխ-ները վերաբերում են գազադինամիկայի, ջերմափոխանակության, ավտոմատ կարգավորման, ռոտորների դինամիկայի և տուրբոսարքերի թրթռաանկուսացման հարցերին: ԽՍՀՄ (1977), ՌԴ (1994) Պետ., Լենինյան (1980) մրց-ներ:

ԿԻՐՇ (Kirsch) Սառա (Ինգրիդ Բեռնշտայն, 1935–2013), գերմանացի գրող: Հեղինակ է «Ուղևորություն քաղաքից դուրս» (1967), «Երկրային թագավորություն» (1982) բանաստեղծությունների ժող-ների, որտեղ փորձել է արտացոլել մարդու զգացմունքների նրբերանգներն ու գիտակցության խճանկարը, «Հովազ-կինը» (1973), «Կատուն՝ անձրևի տակ» (2007) և այլ պատմվածքների ժող-ների, մանկ. գրքերի:

ԿԻՐՇԱ ԴԱՆԻԼՈՎ (Կիրիլ Դանիլովիչ), XVIII դ–ի ռուս թափառական դերասան: Ենթադրվում է, որ կազմել է «Հին ռուսական բանաստեղծություններ» (1804, 1818՝ երաժշտ. նշանագրերով) ռուս. բիլինաների, պատմ., քնար. երգերի, հոգևոր և կատակերգ. չափածո գործերի առաջին ժող-ը:

ԿԻՐՈԳԱ (Quiroga) Հորասիո Միլվեստրե Ֆորտեսա (1878–1937), ուրուգվայցի գրող, մոդեռնիզմի, կարճ պատմվածքի ժանրի ներկայացուցիչ: Հեղինակ է «Անտառի հեքիաթները» (1918), «Անակոնդա» (1921), «Մյուս կողմում» (1935) պատմվածքների ժող-ների, որտեղ պատկերել է մարդուն թշնամի բնության ուժերը, ներկայացրել աշխարհի անճանաչելիության մասին գաղափարներ, ախտաբան. հոգեբ-յան գեղ. հետազոտությունները: Ինքնասպան է եղել: Հայ. հրատարակվել են «Սելվայի հեքիաթները» (1963), «Պատմություններ սիրո խենթության և մահվան մասին» (2013) ժող-ները:

ԿԻՐՈՎ Պյոտր (ծ. 1942), բուլղար մարզիկ (հունա–հռոմ. ըմբշամարտ): Օլիմպ. խաղերի (1968, 1972), աշխարհի և Եվրոպայի բազմակի (1967–76) չեմպիոն:

ԿԻՐՈՎ (Կոստրիկով) Սերգեյ Միրոնովիչ (1866–1934), խորհրդ. կուս. և պետ. գործիչ: 1920–ին ընտրվել է ՌԿ(բ)Կ ԿԿ Կովկաս. բյուրոյի անդամ: 1921–ից՝ Ադրբեջանի Կոմկուսի ԿԿ 1–ին քարտուղար, 1926–ից՝ կուս-յան Լենինգրադի նահանգկոմի, քաղկոմի և ՀամԿ(բ)Կ ԿԿ Հս-արմ. բյուրոյի 1–ին քարտուղար, միաժամանակ (1934)՝ ՀամԿ(բ)Կ ԿԿ քարտուղար և քաղբյուրոյի անդամ: Կ–ին Լենինգրադում սպանել է ահաբեկիչ Լ. Վ. Նիկոլաևը: Կ–ի սպանությունը Ի. Վ. Ստալինն օգտագործել է զանգված. բռնաճնշումներ կազմակերպելու համար:

ԿԻՐՈՎ (անցյալում՝ Խլինով, Վյատկա), ք. ՌԴ–ում՝ Վյատկա գետի ափին, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 497,0 հզ. (2016): Պատմ., մշակութ., արդ. և գիտ. կենտրոն է: Կ–ում են Ա. Ս. Գերցենի, Մ. Ե. Սալտիկով–Շչեդրինի տուն–թանգարանները: XIX դ–ում և XX դ–ի սկզբին եղել է քաղ. աքսորավայր:

ԿԻՐՈՎԱԲԱԴԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ, հայկ. ներկայացումներ Կիրովաբադում (այժմ՝ Գյանջա) խաղացել են 1870–ական թթ–ից: 1882–ից տեղի սիրողների հետ ելույթներ են ունեցել Ս. և Ա. Սաֆրազյանները, Գ. Տեր–Դավթյանը, Հ. Աբելյանը, Սիրանույշը, Ա. Ոսկանյանը և ուր.: Պետ. թատրոնը գործել է 1935–49–ին, որտեղ տարբեր տարիների աշխատել են Կ. Ալվարյանը (գլխ. ռեժ.՝ 1935–36), Ա. Ալայանը (գլխ. ռեժ.՝ 1936–46), Լ. Աբրահամյանը (գլխ. ռեժ.՝ 1946–49), դերասաններ Լ. Աղաբաբյանը, Պ. Բաղյանը, Գ. Թավրիզյանը և ուր., բեմադրվել են Գ. Սունդուկյանի «Պեպո», Շիրվանզադեի «Նամուս», Կ. Մ. Սիմոնովի «Ռուսական հարց» և այլ գործեր:

ԿԻՐՈՎԻ ՄԱՐՋ, վտմ ՌԴ Մերձվոլգյան դաշն. օկրուգում: Տարածքը՝ 120,4 հզ. *կմ²*, բն.՝ 1,3 մլն (2015): Վարչ. կենտրոնը՝ *Կիրով*:

ԿԻՐՈՎՈԳՐԱԴ (անցյալում՝ Ելիզավետգրադ), ք. Ուկրաինայի կենտրոնում՝ Ինգուլ գետի ափին, համանուն մարզի և շրջանի վարչ. կենտրոնը: Բն.՝ 232 հզ. (2015): Զարգացած են մեքենաշինությունը, լ–հանք. արդ–յունը, սննդի արտադրյան ճյուղերը:

ԿԻՐՈՎՈԳՐԱԴԻ ՄԱՐՋ, վտմ Ուկրաինայում՝ Դնեպր և Հվ. Բուգ գետերի միջակայքում: Տարածքը՝ 24,6 հզ. *կմ²*, բն.՝ 980,6 հզ. (2015): Վարչ. կենտրոնը՝ *Կիրովոգրադ*:

ԿԻՐՊԻՉԵՎ Միխայիլ Վիկտորովիչ (1879–1955), ռուս ջերմատեխնիկ և ջերմաֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939): Աշխ-ները վերաբերում են ջերմափոխանցման շարժընթացների ֆիզ. մոդելավորմանը և ջերմ. սարքվածքներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941):

ԿԻՐՊԻՉՆԻԿՈՎ Միխայիլ Պետրովիչ (ծ. 1945), ռուս մոլ. կենսաբան: ՌԳԱ ակադ. (1997, թղթ. անդամ՝ 1994–ից): Պ. Ա. *Կիրպիչնիկովի* որդին: 1998–2000–ին՝ ՌԴ գիտ–յան և տեխնոլոգիաների նախարար: Աշխ-ները վերաբերում են գենների գործունեության կարգավորման և կենսատեխնոլոգիայի խնդիրներին: ՌԴ Պետ. մրց. (1999):

ԿԻՐՊԻՉՆԻԿՈՎ Պյոտր Անատոլևիչ (1913–1997), ռուս քիմիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1991, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1976–ից), ԽՍՀՄ ԳԱ Կազանի մասնաճյուղի նախագահ՝ 1982–87–ին: Մ. Պ. *Կիրպիչնիկովի* հայրը: Աշխ-ները վերաբերում են պոլիմերների կայունացմանը՝ ֆոսֆորօրգ. միացություններով, բազմասուլֆիդ. օլիգոմերներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1989):

ԿԻՐՊԻՉՆԻԿՈՎ Վալերի Սերգեևիչ (1908–1991), ռուս գենետիկ, ձկնաբան: Սոց. աշխ. հերոս (1990): Ն. Կ. *Կոլցովի* և Ս. Ս. *Չետվերիկովի* աշակերտը: Աշխ-ները վերաբերում են գենետիկային և ձկների (հիմնականում՝ կարպերի և հեռավորարլ. սաղմնանձկների) ընտրասերման մեթոդներին: Հեղինակ է «Ձկների ընտրասերման գենետիկական հիմունքները» (1979) դաս. աշխ-յան:

ԿԻՐՊՈՆՈՍ Միխայիլ Պետրովիչ (1892–1941), ռուս զորահրամ., գեն–գնդ. (1941): ԽՄ հերոս (1940): ՀՄՊ–ի ժամանակ ղեկավարել է (1941–ի հունիս–սեպտ.) Հվ-արմ. ճակատի զորքերը:

ԿԻՐՊՈՍԻՆ Վալերի Յակովլևիչ (1898–1997), ռուս գրականագետ, քննադատ: ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1969): Պրոֆ. (1956): Հեղինակ է «Լեռնիդ Լեոնովի վեպերը» (1932), «Դոստոևսկու աշխարհը» (1980) և այլ աշխ-ների, նաև գր. հոդվածների: Հայ. է հրատարակվել «Հայ ժողովրդի մեծ էպոսը. «Սասունցի Դավիթը»» (1940) աշխ-ը:

ԿԻՐՍԱՆՈՎ Ալեքսանդր Վասիլևիչ (1902–1992), քիմիկոս–օրգանիկ: Ուկր. ԽՍՀ ԳԱ ակադ. (1961): Բացահայտել է ֆոսֆազոռեակցիան («Կիրսանովի ռեակցիա») և կարբոնաթթուների ուղղակի ամիդավորման ռեակցիան: Լենինյան մրց. (1974):

ԿԻՐՍԱՆՈՎ Սեմյոն Իսահակովիչ (1906–1972), ռուսագիր հրեա բանաստեղծ: Հեղինակ է պատմ., սոցիալ., փիլ. և քնար. թեմաներով «Ընկեր Մարքս» (1933), «Շաբաթվա յոթ օրը» (1956), «Դեկֆինիադա» (1971) պոեմների, «Մակար Մազայ» (1947–50, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1951) չափածո վիպակի, «Փորձեր» (1927), «Ընկեր բանաստեղծություններ» (1953), «Հայելիներ» (1970) բանաստեղծությունների ժող-ների:

ԿԻՐՎԵՍՆԻԵՄԻ Հյամյալյայնեն (Kirvesniemi Hämäläinen) Մարյա Լիիսա (ծ. 1955), ֆինն մարզուհի (դահուկ. սպորտ): Ձմեռ. օլիմպ. խաղերի (1984), աշխարհի (1978, 1989) չեմպիոն: Ամուսինը՝ **Հարթի Տապանի Կ.** (ծ. 1958), 6 ձմեռ. օլիմպ. խաղերի (1960–98) բրոնզե մեդալակիր է, աշխարհի չեմպիոն (1989):

«ԿԻՐՏԱ�Տ», ղրղզ. տեղեկատվ. գործակալություն: Գործում է 1920–ից Բիշքեկում: Մինչև 1936–ը՝ Ռուս. հեռագր. գործակալության բաժանմունք:

ԿԻՑԲԵՐԳ (Kitzberg) Ավգուստ (1855–1927), էստոնացի գրող: «Փոխակերպուկը» (1912), «Քսակների աստվածը» (1915) դրամաներում բողոքել է սոցիալ. անարդարության և փողի իշխանության դեմ, հավատացել բարոյական կատարելությանը:

«ԿԻԽՐԻՆԻ ՅՈՒՆԾ», գր., ազգագր., պատմ., մշակութ. պարբերագիրք (1930–33, Նյու Յորք): Կյուրինի հայրենակց. միության հրտ.: Խմբ.՝ Խաչատուր Մակարյան:

ԿԻՖԻՍՈՂՈՍՈՒ ԱՎԱԳ, հույն քանդ. (մ. թ. ա. IV դ–ի 1–ին կես), *Պրաքսիտելեսի* հայրը: Հեղինակ է «Էյրենա և Պիղատոս» արձանի (մ. թ. ա. մոտ 374, պահպանվել է կրկնօրինակը):

ԿԻՖՈՋ (հուն.՝ kyphos – կորացած, կռացած), ողնաշարի (հիմնականում՝ կրծքային բաժնի) ծռում՝ կորությամբ դեպի դուրս: Առաջանում է 1 կամ մի քանի ողների ախտահարման դեպքում (տուբերկուլոզի ժամանակ): Կոպիտ ձևախախտումից գոյանում է *կուզ*:

ԿԼԱԳԵՍ (Klages) Լյուդվիգ (1872–1956), գերմանացի հոգեբան և փիլ.: Աշակել է ուսմունք արտահայտությունների մասին: Աշխ-ները վերաբերում են բնավորության ուսումնասիրությանը և ձեռագրաբանությանը: Ոգին համարել է «ոչ տիեզերական», հոգևոր կյանքի ամբողջականությունը քայքայող ուժ («Ոգին որպես հոգու ախոյան», հ. 1–3, 1929–32):

ԿԼԱԴԵԼ (Cladel) Լեոն (1834–1892), ֆրանսիացի գրող: Հեղինակ է «Իմ գյուղացիները» (1869), «Ոտաբոբիկները» (1873) և այլ նովելների, նաև պատմվածքների, որտեղ գովերգել է նահապետ. գյուղի կացութաձևը, «Ժակ Ռատաս (INRI)» (1872–87, հրտ.՝ 1931) վեպի:

ԿԼԱԴՈ Նիկոլայ Լավրենտևիչ (1862–1919), ռուս ռազմածով. տեսաբան և պատմաբան, ծովակալության գեն–մայոր (1912): Պետրոգրադի ծով. ակադ–ի պրոֆ. (1917–19–ին՝ պետ): Աշխ-ները վերաբերում են ռազմածով. ռազմարվ–ի տեսության և պատմության հարցերին:

ԿԼԱԴՈՆԻԱ, թփակալող քարաքոսերի ցեղ: Հայտնի է 300 տեսակ՝ հիմնականում տունդրայի անտառներում և ճահիճներում: Մի շարք տեսակներ հս. եղջերուների կեր են, 2 տեսակ պահպանվում է:

ԿԼԱԴՈՖՈՐԱ, կանաչ ջրիմուռների ցեղ: Սաներադիտակ., հիմնանյութին ամրացող օրգանիզմներ են՝ կազմված միաստար ճյուղավորված թելերից: Հայտնի է 100

տեսակ՝ ծովերում և քաղցրահամ ջրամբարներում:

ԿԼԱՅԶԵՆ (Claisen) Լյուդվիգ (1851–1930), գերմանացի քիմիկոս-օրգանիկ: Սինթեզել է բազմաթիվ օրգ. միացություններ (իզատին ևն): Հայտնաբերել է (1887) էսթերների կոնդենսացման ռեակցիան, որը հայտնի է ***Կլայզենի կոնդենսացում*** անվանումով: Հայտնագործել է (1912) ֆենոլների ալիլեթերների վերախմբավորումը (տես ***Կլայզենի վերախմբավորում***):

ԿԼԱՅԶԵՆԻ ԿՈՆԴԵՆՍԱՑՈՒՄ, ***էսթերային կոնդենսացում***, ալկալիների առկայությամբ էսթերների կոնդենսացումը CH-թթուների հետ հանդիսանում է β-երկկարբոնիլ. միացությունների կամ β-կետոնիտրիլների ստացման: Կիրառում են արդ-յան մեջ ացետաքացախաթթվի էթիլէսթեր և ացետիլացետոն ստանալու համար:

ԿԼԱՅԶԵՆԻ ՎԵՐԱԽՄԲԱՎՈՐՈՒՄ, վինիլալիլ և արիլալիլեթերների ալիլ խմբի տեղափոխությամբ ջերմ. ներմոլ. վերախմբավորում, որի արդյունքում առաջանում են իզոմեր C-ալիլածանցյալներ: Կիրառում են տեղակալված ֆենոլների, չհագեցած կարբոնիլ. միացությունների, որոշ տերպենների սինթեզման համար:

ԿԼԱՅՊԵԴԱ, ք. Լիտվայի արմ-ում, նվինգստո Բալթիկ ծովի ափին, համանուն գվո-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 157,4 հզ. (2014): Հիմնադրվել է 1252-ին: Դանգե գետով Կ. բաժանվում է ձախափնյա (Հին ք.) և աջափնյա (ժամանակակից քաղաքի կենտրոն) մասերի:

ԿԼԱՅՍՏ (Kleist) Էվալդ ֆոն (1881–1954), գերմանացի գեն-ֆլդմ. (1943): ԵՀՊ-ի ժամանակ եղել է տանկ. կորպուսի և տանկ. խմբի հրամ. Լեհաստանում, Ֆրանսիայում և Բալկաններում, տանկ. խմբի և բանակի հրամ.՝ խորհրդա-գերմ. ճակատում, 1942–44-ին՝ «Ա» բանակների խմբի հրամ. Հա. Կովկասում և Հվ. Ուկրաինայում: Մեղադրվել է բռնագրավված տարածքում ռազմագերիների և խաղաղ բնակչության ոչնչացման համար, դատապարտել է խորհրդ. ռազմ. դատարանը, մահացել է բանտում:

ԿԼԱՅՍՏ Հենրիխ ֆոն (1777–1811), գերմանացի գրող, ռոմանտիզմի ներկայացուցիչ: Հեղինակ է «Պենտեսիլեյա» (1808), «Գեյլբրոնցի Կետխենը» (1810) չափածո դրամաների, «Միխայել-Կոլհաաս» (1810) և այլ նովելների, «Գերմանացիների կատեխիզիսը» (1809), «Ֆրիդրիխ Համբուրգցի արքայազն» (1808, հրտ.՝ 1821) և այլ դրամաների, «Ջարդված սափոր» (1811) երգիծ. կատակերգության:

ԿԼԱՆՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, որևէ մարմնի կլանած ճառագայթման հոսքի հարաբերությունն այդ մարմնի վրա ընկած ճառագայթման հոսքին: Ի տարբերություն ***կլանման ցուցչի***՝ Կ. գ. կախված է շերտի հաստությունից, որի միջով անցնում է լույսը, այսինքն՝ կախված է մարմնի չափերից:

ԿԼԱՆՈՒՄ, 1. **ալիքների**, ալիքների էներգիայի փոխակերպումն էներգիայի այլ տեսակների: Պայմանավորված է միջավայրի կամ տարածման ճանապարհին գտնվող մարմինների հետ ալիքների փոխազդեցությամբ: 2. **Լույսի**, նյութի միջով անցնելիս լույսի ինտենսիվության նվազումը՝ պայմանավորված նյութի մասնիկների հետ լույսի փոխազդեցությամբ: Ուղեկցվում է նյութի տաքացումով, ատոմների և մոլ-ների իոնացումով ու գրգռումով, լուսաքիմ. շարժընթացներով:

Կլանած էներգիան այն կարող է ամբողջովին կամ մասնակիորեն վերաճառագայթել այլ հաճախությամբ: Տես ***Բուգեր-Լամբերտ-Բերի օրենք***: 3. Զայ-ի, որևէ միջավայրով անցնելիս ձայնի ինտենսիվության նվազում՝ ձայն. էներգիայի՝ այլ տեսակի էներգիաների (օր.՝ ջերմ.) փոխակերպման հետևանքով: Բնութագրվում է ***կլանման գործակցով***:

ԿԼԱՊԵՅՐՈՆ (Clapeyron) Բենուա Պոլ Էմիլ (1799–1864), ֆրանսիացի ֆիզիկոս և ճարտարագետ: Փարիզի ԳԱ անդամ (1858): Կրկնել է Ն. ***Կառնոյի*** մոտեցումները և թերմոդինամիկայում առաջինը կիրառել գրաֆիկ. մեթոդն ու դրա արդյունքներին տվել երկրչփ. տեսք: ***Կառնոյի ցիկլի*** համար արտածել է ***իդեալական գազի*** վիճակի հավասարում (***Կլապեյրոնի հավասարում***), բացահայտել է նյութերի հալման և եռման կետերի կախումը ճնշումից (***Կլապեյրոն-Կլաուզիուսի հավասարում***):

ԿԼԱՊԵՅՐՈՆԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄ, **Կլապեյրոն-Մենդելեևի հավասարում**, ***իդեալական գազի*** վիճակը բնորոշող հարաչափերի (p-ն ճնշումն է, V-ն՝ ծավալը և T-ն՝ բացարձակ ջերմաստիճանը) միջև եղած կախվածությունը՝ $pV = BT$, որտեղ

$$B = \frac{m}{\mu} \cdot R$$

(m-ը զանգվածն է, μ-ն՝ մոլ. զանգվածը): Հայտնաբերել է Բ. ***Կլապեյրոնը*** 1834-ին: 1 մոլ իդեալ. գազի ($\frac{m}{\mu}=1$) համար $pV = RT$ (R-ը ***գազային հաստատունն*** է) հավասարումն ստացել է Դ. Ի. ***Մենդելեևը*** (1874):

ԿԼԱՊԵՅՐՈՆ-ԿԼԱՈՒԶԻՈՒՍԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄ, թերմոդինամիկայի հավասարումներից (առաջարկել է Բ. ***Կլապեյրոնը*** 1834-ին, կատարելագործել է Ռ. ***Կլաուզիուսը*** 1850-ին), կապ է հաստատում հավասարակշռության մեջ գտնվող 2 ֆազից (օր.՝ հեղուկ և գոլորշի) բաղկացած միաբաղադրիչ համակարգի P ճնշման և T ջերմաստիճանի միջև: Բնորոշում է 1-ին կարգի ֆազ. անցման (շոգեգոյացում, հալում ևն) կորը:

$$\frac{dP}{dT} = \frac{L}{T \cdot \Delta v},$$

որտեղ L-ը ֆազ. անցման տես. ջերմությունն է, Δv-ն՝ տես. ծավալի փոփոխությունը:

ԿԼԱՊԿԱ (Klapka) Դիորդ (1820–1892), 1848–49-ի Հունգարիայի հեղ-յան ժամանակ հունգ. ազգ. բանակի հիմնադիրներից: Գլխավորելով զինվ. միավորումները՝ 1849-ին մի քանի անգամ պարտության է մատնել ավստր. զորքերին: Հեղ-յան պարտությունից հետո՝ վտարանդի (մինչև 1867-ը):

ԿԼԱՊՐՈՍ (Klaproth) Մարտին Հենրիխ (1743–1817), գերմանացի քիմիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1805): Հայտնագործել է ուրանը և ցիրկոնիումը (1789), տիտանը (1795), բազմաձևության երևույթը (1798):

ԿԼԱՐՆԵՏ (իտալ.՝ clarinetto, լատ.՝ clarus – պարզ), փայտե փողավոր երաժշտ. գործիք: Ծագել է ***սրինգից***: Բաղկացած է եռամաս փողից, կտուցաձև ***ծնկից***, որի վրա ամրացված է եղեգնե պիպիչը: Տեսակներն են՝ փոքր Կ., ալտային կամ տենորային Կ. (բասհոռն), բաս-Կ., կոնտրաբաս. Կ.: Ժամանակակից Կ. ունի 20 կափույր և 7 ձայնանցք:

ԿԼԱՍ (Klas) Էրի (1939–2016), հրեա դիրիժոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1986): 1975-ից՝ Էստ. ՕՖԹ-ի գեղ. ղեկ., միաժամանակ գլխավորել է Շվեդ. թագավոր. օպերան, Ֆիննական. օպերան, մի շարք սիմֆ. նվագախմբեր (Դանիա, Նիդեռլանդներ, Իսրայել ևն), 2006-ից՝ «Նոր օպերայի» (Մոսկվա) գլխ. դիրիժոր: Ղեկավարել է հիմնականում էստոնացի կոմպոզիտորների, Ա. Գ. Շնիտկեի գործերի կատարումները: Էստ. ԽՍՀ Պետ. մրց. (1985): ՅՈՒՆԻՍԵՖ-ի «Բարի կամքի» դեսպան (1999):

ԿԼԱՍ (Claesz) Պիտեր (մոտ 1597–1661), հոլանդացի գեղանկարիչ: Նատյուրմորտի վարպետ: Պատկերել է «նախաճաշեր»՝ ընդհ. գուներանգով միավորված պարզ կենցաղ. իրեր՝ տեղադրված նուրբ մշակված լուսաօդ. միջավայրում («Ծխամորճեր և կրակարան» ևն):

ԿԼԱՍԻՑԻԶՄ (լատ.՝ classicus – դաս., օրինակելի), գեղ. ոճ և գեղագիտ. ուղղություն XVII դ.–XIX դ-ի սկզբի եվրոպ. գրկ-յան մեջ և արվ-ում: Գեղարվ-ի բարձրագույն տիպարն ու չափանիշը կլասիցիստ գրողներն ու արվեստագետները տեսնում էին անտիկ գրկ-յան մեջ և արվ-ում, որտեղից էլ վերցնում էին սյուժեներ ու կերպարներ, ոճեր՝ արտահայտելով ժամանակի հասքաղ. խնդիրներ: Կ-ի գեղագիտ. խնդիրները «բնությանն ընդօրինակելն» էր, անտիկ դաս. հեղինակներին նմանվելը ևն: Կ. պարտադրում էր որոշակի օրենքներ և կանոններ: Դրամատուրգիան կառուցված էր «եռամիասնության օրենքի» (տեղ, ժամանակ, գործողություն) հիման վրա: Կ-ի սկզբունքներն առավել բնորոշ և ամբողջ. դրսևորվել են ֆրանս. արվ-ում, մասնավորապես՝ Կոռնելի, Ռասինի, Մոլիերի, Լաֆոնթենի, Ֆ. Լարոշֆուկոյի և ուր. ստեղծագործություններում, տես. հիմունքները՝ Ն. Բուալոյի «Քերթողական արվեստ» (1674) չափածո պոեմում, Մոլիերի երկերում, Գերմանիայում՝ Յ. Գյոթեի և Ֆ. Շիլլերի՝ վայմարյան շրջանի գործերում, Ռուսաստանում՝ Մ. Վ. Լոմոնոսովի և Գ. Ռ. Դերժավինի օդաներում, Ա. Պ. Սումարոկովի և Յ. Բ. Կնյաժնինի ողբերգություններում: XVIII դ-ում Կ. գոյակցել է լուսավոր. ռեալիզմի հետ: Կ. հայ գրկ-յան մեջ սկզբնավորվել է XVIII դ-ում: Կ-ի ամենանշանավոր ստեղծագործությունն Արսեն Բագատունու «Հայկ դիւցազն» (1858) պոեմն է: Նշանակալի են Սարգիս Տիգրանյանի, Էդուարդ Հյուրմյուզյանի, Պետրոս Մինասյանի և ուր. գործերը:

ԿԼԱՍՈՆ Ռոբերտ Էդուարդովիչ (1868–1926), ռուս. էլեկտրատեխնիկ: 1914-ին առաջարկել է տորֆի արդյունահանման եղանակ, որն իրականացվել է 1920-ական թթ-ի սկզբին: Կառուցել է մի շարք էլեկտրակայաններ Ռուսաստանում, այդ թվում՝ աշխարհում 1-ին տորֆով աշխատողը (1912–14, ներկայում՝ Կ-ի անվ.) Նոգինսկ ք-ի մոտ: ԳՕԷԼՌՈ պլանի կազմման մասնակից:

ԿԼԱՍՄՈՆ (Claesson) Ստիգ (1917–2008), շվեդ քիմիկոս: ՌԳԱ արտ. անդամ (1991, ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ՝ 1976-ից): Աշակել է կյանքի կարճ տևողություն ունեցող ակտիվ քիմ. մասնիկների իմպուլս. ստացման եղանակները:

ԿԼԱՍՏԵՐ, 1. (տնտ.) ձեռն-ների ճկուն ու ազատ միավորում: Կ. ձևավորող ձեռն-ները կարող են կապված լինել միասն. տեխնոլոգ. շղթայով (ուղղահայաց ինտեգրում), թողարկել տարբեր տիպերի

համասեռ արտադրանք և օգտվել ընդհ. ենթակառուցվածքից ու տեխնոլոգ. նորույթներից (հորիզոն. ինտեգրում): Հատուկ դեր ունեն նորարար. ակտիվության Կ-ները, օր.՝ «Սիլիկոնային ճահիճը»՝ Քեմբրիջում (Մեծ Բրիտանիա), «Սիլիկոնային հովիտը»՝ Կալիֆոռնիայում (ԱՄՆ), «Ռադիոհովիտը»՝ Ստոկհոլմի արվարձանում ևն: 2. (Ֆիզ.) Նույնատիպ օբյեկտների (օր.՝ աստղ. կուտակումների, ատոմ. Կ-ի) կուտակումներ: Ատոմ. և մոլ. Կ-ների հիման վրա ստեղծվել են այսպես կոչված կլաստեր. նյութեր (կիսահաղորդիչներ, գերհաղորդիչներ, կատալիզորդներ, հատուկ հատկություններով պոլիմերներ ևն): 3. (Տեղեկագիտ-յուն) տրամաբանորեն կամ ֆիզիկորեն իրար կապված համասեռ օբյեկտների (համակարգիչներ, կոշտ սկավառակների բաժանմունքներ ևն) խմբեր, որոնք դիտարկվում են որպես միասնական պաշար: Համակարգչ. Կ. նախատեսված է նրա ապահովող ծառայությունների արտադրողականությունը և հասանելիությունը բարձրացնելու համար (նրա մեջ մտնող համակարգիչների համեմատությամբ): Օգտագործվում և կառավարվում է որպես մի ամբողջություն: 4. (Երաժշտ.) փոքր կամ մեծ սեկունդաներից, միկրոտոներից կազմված ***համահնչյուն***: Տերմինը կիրառել է Հ. ***Կաուելլը***:

ԿԼԱՍՏԵՐԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ, հիմն. վիճակում ծանր միջուկների ինքնակամ տրոհում, որն ուղեկցվում է ^{4}He–ից ծանր, բայց տրոհման ամենաթեթև բեկորներից թեթև միջուկների (կլաստերների) արձակումով: Առաջին անգամ դիտվել է 1984–ին: Շարժընթացի չափազանց փոքր հավանականության պատճառով Կ. ճ. հայտնաբերվել է միայն մոտ 20 նուկլիդների համար: Մայր միջուկները՝ ^{221}Fr–^{242}Cm, իսկ արտաթռչող բեկորները ^{14}C –^{34}Si տիրույթներում են:

ԿԼԱՎԴԻԱՆՈՍ (Claudianus) Կլավդիոս (մոտ 370–404–ից հետո), հռոմեացի բանաստեղծ: Գրել է լատ. և հուն.: Հեղինակ է առասպել. «Պրոզերպինայի առևանգումը» և սուր քաղ. թեմաներով այլ պոեմների:

ԿԼԱՎԴԻՈՍ (Claudius) Տիբերիոս Ներոն Գերմանիկոս (մ. թ. ա. 10–մ. թ. 54), Հռոմի կայսր՝ 41–ից: Կլավդիոսների հարստությունից: Ընդլայնել է կայսրության սահմանները, հռոմ. քաղաքացիության իրավունք է շնորհել նահանգ-ների բնակիչներին: Կ–ի պատվերով ***Պլինիոս Ավագը*** կազմել է Մեծ Հայքի քարտեզը, որից օգտվել է Կլավդիոս Պտղոմեոսը: Կ. 43–ին կալանքից ազատել է ***Միհրդատ Իբերացուն*** և զորքով ուղարկել Հայաստան. սրվել են պարթևա–հռոմ. հակասությունները:

ԿԼԱՎԵԼ (Clavel) Բեռնար Շառլ Անրի (1923–2010), ֆրանսիացի գրող: Հեղինակ է կենսագր. «Մեծ համբերություն» (1962–64) քառերգության, ժամանակակից ֆրանսիացի երիտասարդների կյանքը պատկերող «Փոքր պանդոկ» (1960), «Հերկուլեսը հրապարակում» (1966), «Երկնքի սյուները» (հ. 1–5, 1976–81) պատմ. վիպերգի, արվեստագիտ. աշխ-ների, հրապարակախոս. գործերի:

ԿԼԱՎԵՍԻՆ (ֆրանս.՝ clavecin), ստեղնալարավոր կսմթային երաժշտ. գործիք: Դաշնամուրի նախատիպերից: Հայտնի է XVI դ–ից: Տարբերում են Կ–ի չեմբալո, վերջինել, սպինետ, կլավիցիտերիում տեսակները: Կլավեսին. երաժշտության նշանավոր հեղինակներից են Դ. Սկառլատտին, Ժ. Ռամոն, Ֆ. Կուպերենը և ուր.:

ԿԼԱՎԻԽՈ (Clavijo) Ռույ Գոնսալես դի (ծ. թ. անհտ–1412), իսպանացի դիվանագետ: 1403–06–ին եղել է Լանկ Թամուրի մոտ Կաստիլիայի թագավոր Հենրի III–ի ուղարկած պատվիրակության (ճանապարհին անցել է նաև Հայաստանով) կազմում: Կազմել է ուղեգրություն (հրտ.՝ 1582, Սևիլիա), որտեղ կան Հայաստանին վերաբերող առանձին գլուխներ ու հատվածներ:

ԿԼԱՎԻԿՈՐԴ (ուշ լատ.՝ clavichordium, < լատ. clavis – բանալի և հուն.՝ chorde – լար), ստեղնավոր-լարավոր-հարված. երաժշտ. գործիք: Հայտնի է XV դ–ից: Տարածվել է եվրոպ. երկրներում: Ունի քառանկյուն երկարավուն տուփի ձև: Տարբերում են դիատոնիկ (Հին Կ.) և քրոմատիկ լարվածքի Կ-ներ: XIX դ–ի սկզբին Կ. փոխարինվել է ***դաշնամուրով***:

ԿԼԱՎԻՐ (գերմ.՝ Klavier), 1. ստեղնավոր-լարավոր երաժշտ. գործիքների (***կլավիկորդ, կլավեսին, դաշնամուր*** ևն) ընդհ. անվանումը (XVII–XVIII դդ.): 2. Կ. կամ **կլավիրաուսգուգ** (< գերմ. Klavier – դաշնամուր և Auszug – դուրս հանել)՝ երգեցողության և դաշնամուրի կամ միայն դաշնամուրի համար վոկալ–սիմֆ. ստեղծագործության (օպերա, օրատորիա, կանտատ ևն) ***պարտիտուրի***, ինչպես և դաշնամուրի համար բալետի պարտիտուրի փոխադրումը: Կ. են անվանում սիմֆ. կամ կամեր–անսամբլ. երկերի դաշնամուր. փոխադրությունը (2 կամ 4 ձեռքի համար):

ԿԼԱՐԵ (Klare) Հերման (1909–2003), գերմանացի քիմիկոս: ԳԴեմՀ ԳԱ նախագահ՝ 1968–79–ին: ՌԳԱ արտ. անդամ (1991, ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ՝ 1971–ից): Աշխ-ները վերաբերում են քիմ. մանրաթելերի քիմիային և տեխնոլոգիային:

ԳԴեմՀ Ազգ. (1951, 1963), ԽՍՀՄ ԳԱ Մ. Վ. Լոմոնոսովի անվ. (1977) մրց-ներ:

ԿԼԱՐԵՆ (լատ.՝ clarus – փայլուն), հանածո քարածխի կիսափայլուն, փուխր բաղադրամաս: Կազմված է հելիֆիցիր. (75 % և ավելի), լիպոիդ. ու ֆյուզենիզիր. միկրոբաղադրամասերից:

«ԿԼԱՐՏԵ», 1919–ին հիմնադրված մշակույթի գործիչների միջազգ. միավորում: Հիմնադրել է Ա. ***Բարբյուսը***:

ԿԼԱՈՒԴԻՈՍ (Claudius, Շմիդտ) Էդուարդ (1911–1976), գերմանացի գրող: 1933–ից՝ վտարանդի: Մասնակցել է Իսպանիայի քաղաքաց. պատերազմին (1936–39), որից ստացած ծանր տպավորությունները պատկերել է «Կանաչ ձիթենիներ և մերկ լեռներ» (1945) վեպում: 1939–45–ին եղել է ներկալվածների ճամբարներում և բանտերում: 1949–ից հետո ապրել է ԳԴեմՀ–ում: Հեղինակ է նաև «Նրանց մասին, ովքեր մեզ հետ են» (1951) վեպի, նաև պատմվածքների, հուշերի:

ԿԼԱՈՒԶԵՎԻՑ (Clausewitz) Կառլ ֆոն (1780–1831), գերմանացի ռազմ. տեսաբան և պատմաբան, պրուս. բանակի գեն–մայոր (1818): 1806–07, 1812–15–ին մասնակցել է ֆրանսիայի դեմ պատերազմներին (1812–14–ին՝ ռուս. ծառայությունում): Վերադառնալով պրուս. բանակ՝ մասնակցել է (1815) ***Վաթերլոյի ճակատամարտին***: 1818–30–ին՝ Բեռլինի ընդհ. ռազմ. ուսումնարանի տնօրեն: Հեղինակ է «Պատերազմի մասին» (հ. 1–3, 1832–34) աշխ-յան:

ԿԼԱՈՒՋԻՈՒՍ (Clausius) Ռուդոլֆ Յուլիուս Էմանուել (1822–1888), գերմանացի ֆիզիկոս, թերմոդինամիկայի հիմնադիրներից: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1878): Տվել է (Ուս. ***Թոմսոնի*** հետ միաժամանակ) թերմոդինամիկայի 2–րդ սկզբունքի 1–ին ձևակերպումը (1850), ներմուծել է «Էնտրոպիա» (1865), «իդեալական գազ», «մոլեկուլի ազատ վազք» հասկացությունները: Հիմնավորել է (1850) ***ֆազային անցման*** ջերմության հավասարումը (***Կլապեյրոն–Կլաուզիուսի հավասարում***): Ապացուցել է վիրիալի թեորեմը (1870): Մշակել է դիէլեկտրիկների բևեռացման տեսությունը (Կ–Մոսոտիի բանաձև): Զևակերպել է «Տիեզերքի ջերմային մահվան» վարկածը:

ԿԼԱՈՒՍ (Klaus) Կառլ (Կաոլ–Էռնստ, 1796–1864), էստոնացի քիմիկոս–բուսաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1861): Հայտնագործել է ***ռութենիում*** քիմ. տարրը (1844), նկարագրել է նրա հատկությունները և որոշել ա. զ.: Աշխ-ները վերաբերում են պլատինային մետաղներին: Առաջիններից է կիրառել (1851) քանակ. եղանակները համեմատ. ֆլորիստիկայում:

ԿԼԱՈՒՍ (Claus) Հյուգո (1929–2008), ֆլամանդացի նիդեռլանդագիր գրող: Ավանգարդիզմի ներկայացուցիչ: Հեղինակ է գյուղ. ընտանիքների քայքայման մասին «Մետսիրս ընտանիքը» (1950), «Զմայլանք» (1962), «Ամոթ» (1972), «Խեցգետնի տարի» (1973) վեպերի, «Շաքար» (1958), «Սև ցեղի առաջնորդը» (1959) և այլ սոցիալ. թեմաներով բնափիլ. նովելների, դրամաների:

ԿԼԱՈՒՍ (Klaus) Յոզեֆ (1910–2001), Ավստրիայի դաշն. կանցլեր՝ 1964–70–ին: 1963–70–ին՝ Ավստր. ժող. կուս-յան նախագահ:

ԿԼԱՈՒՍ Վացլավ (ծ. 1941), Չեխիայի նախագահ՝ 2003–13–ին, վարչապետ՝ 1992–97–ին: 1989–92–ին՝ Չեխիայի և Սլովակիայի Դաշն. Հանրապետության ֆինանսների նախարար, 1998–2002–ին՝ Չեխիայի խորհրդարանի պալատի նախագահ: 1991–2002–ին՝ Չեխիայի քաղաքաց. դեմոկրատ. կուս-յան նախագահ, 2002–08–ին՝ պատվ. նախագահ:

ԿԼՅՈՒԶՎԻԼԻ Դավիթ Սամսոնի (1862–1931), վրացի գրող: Վրաստանի ժող. գրող (1930): Վրաց. քննադատ. ռեալիզմի ներկայացուցիչ: Ս. Դ. ***Կլդիաշվիլու*** հայրը: Հեղինակ է «Սոլոմոն Մորբելաձե» (1894), «Սամանիշվիլու խորթ մայրը» (1897) վիպակների, «Ջոհ» (1893), «Նզովք» (1894) և այլ պատմվածքների, «Իրինայի երջանկությունը» (1897) և այլ պիեսների: Հայ. են հրատարակվել Կ–ու պատմվածքներից (1955) և «Ծխականների մեջ» (1904) գործը:

ԿԼՅՈՒՇՎԻԼԻ Սերգո Դավիթի (1895–1986), վրացի գրող: Դ. Ս. ***Կլդիաշվիլու*** որդին: Հեղինակ է «Մոխիր» (գիրք 1, 2, 1932, 1962), որտեղ պատկերել է վրաց. գյուղի կյանքն ԱՀՊ–ի ժամանակ, խորհրդ. իշխանությունների հաստատմանը նվիրված «Հանգիստ կացարան» (1958) և այլ վեպերի, «Հերոսների սերունդ» (1937), «Եղջերվի կիրճը» (1944), «Վերադարձ» (1952) պիեսների, նաև պատմվածքների ևն:

ԿԼԵ (Klee) Պաուլ (1879–1940), շվեյցարացի գեղանկարիչ, գրաֆիկ: Էքսպրեսիոնիզմի առաջատարներից: «Կապույտ հեծյալներ» միավորման անդամ, հարել

է աբստրակտ արվ–ին, հաճախ օգտագործել սյուրռեալիստ. ձևեր, ստեղծել նույն ոճի կերպարներ: Վարպետորեն համադրել է գեղանկարչ. և գրաֆիկ. կոմպոզիցիաների տարրեր՝ գուն. ներդաշնակությամբ («Ֆլորենցիայի շքեղ ամառանոցները», 1926, ևն):

ԿԼԵԿՉՅԱՆ Դավիթ Հրաչիկի (ծ. 1948), շինարար: Տեխ. գիտ. դ–ր (2014): Աշխ–ները վերաբերում են երկաթբետոնե կոնստրուկցիաների (ծածկի սալեր, հակասեյսմիկ սղնիներ, կոճեր ևն) ֆիզիկամեխ. բնութագրերի ուսումնասիրություններին: 1988–ից՝ Վանաձորի «Բետոն» արտադր. կոոպերատիվի նախագահ: ՀՀ քաղաքաշինության նախ–յան ոսկե մեդալ (2015):

ԿԼԵՄԱՆ (Clément) Ժան Բատիստ (1836–1903), ֆրանսիացի բանաստեղծ–երգահան, հաս. գործիչ, հրապարակախոս: Փարիզի կոմունայի անդամ (1871): Հեղինակ է «Երգեր» (1885), «Հարյուր նոր երգ» (1899) բանաստեղծությունների, «Սոցիալիստական հարցերը հանրամատչելի շարադրանքով...» (հ. 1–2, 1887–88) զրույցների ժող–ների, նաև հուշագրության:

ԿԼԵՄԱՆ Ռենե (1913–1996), ֆրանսիացի կինոռեժ.: *Դիմադրության շարժման* մասնակից: Նկարահանել է «Ճակատամարտ ռելսերի վրա» (1945), «Ցանկապատից այն կողմ» («Մալապագայի պատի տակ», 1948), «Արգելված խաղեր» (1952), «Օր և ժամ» (1963), «Արդյոք այրվում է Փարիզը» (1966) և այլ ֆիլմեր:

ԿԼԵՄԱՆՈՍ (Clemenceau) Ժորժ Բենժամեն (1841–1929), Ֆրանսիայի վարչապետ՝ 1906–09 և 1917–20–ին: Ֆրանսիայի ակադ–ի անդամ (1918): 1880–90–ական թթ–ին՝ ձախ արմատականների կուսյան առաջնորդ: *Փարիզի հաշտության խորհրդաժողովի* (1919–20) նախագահ և Վերսալի հաշտության պայմանագրի (1919) հեղինակներից: Զգտել է հաստատել Ֆրանսիայի գերիշխանությունը Եվրոպայում: 1880–ական թթ–ին եղել է արևմտահայոց ազատագր. շարժման համակիրներից, աշխատակցել է *«Պրո Արմենիա»* թերթին (Փարիզ): ԱՀՊ–ից հետո Կ–ի գլխավորած կառ–յունը հրաժարվել է հայ ժողդ–ին տված խոստումներից:

ԿԼԵՄԵՆՍԵՆԻ ՌԵԱԿՑԻԱ, ցինկի ամալգամի և աղաթթվի ազդեցությամբ ալդեհիդների կամ կետոնների կարբոնիլ խմբի (> C = O) թթվածնի տեղակալումը ջրածնի 2 ատոմներով: Կիրառվում է կետոններից համապատասխան ճարպարոմատիկ ածխաջրածիններ ստանալու համար: Ռեակցիան մշակել է ամերիկացի քիմիկոս Է. Ք. Կլեմենսենը (1913–14):

ԿԼԵՄԵՆՏԻ (Clementi) Մուցիո (1752–1832), իտալացի դաշնակահար, կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ: 1766–ից՝ Մեծ Բրիտանիայում: «Լոնդոնյան» դաշնամուր. դպրոցի հիմնադիրն ու ղեկ–ը: Դաշնամուր. սոնատի դաս. ձևի ստեղծողներից: Հեղինակ է «Մեթոդ դաշնամուրի համար» (հրտ.՝ 1801) աշխ–յան, «Ճանապարհ դեպի Պառնաս» էտյուդների ժող–ի:

ԿԼԵՄԿԵ (Klemke) Վեռներ (1917–1994), գերմանացի գրաֆիկ: ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի պատվ. անդամ (1973): Գրքի և ամսագրերի գրաֆիկայի վարպետ: Պատկերազարդել է Գրիմ եղբայրների, Վ. Վ. Մայակովսկու և ուր. գործերից:

ԿԼԵՄՊԵՐԵՐ (Klemperer) Օտտո (1885–1973), գերմանացի դիրիժոր, կոմպոզիտոր: Եղել է Պրահայի, Համբուրգի, Ստրասբուրգի, Քյոլնի, Վիսբադենի օպեր., Բեռլինի «Կրոլլ–թատրոն»–ի (1927–1931) և պետ. օպեր. թատրոնի (1931–33) դիրիժոր, 1933–39–ին ղեկավարել է Լոս Անջելեսի սիմֆ. նվագախումբը, Լոնդոնի «Ֆիլհարմոնիա» (1959–ից՝ գլխ. դիրիժոր) նվագախմբի հետ ձայնագրել է Լ. վան Բեթհովենի բոլոր սիմֆոնիաները (1957): Հեղինակ է օպերաների, սիմֆոնիաների, մեսսաների, կամեր–գործիք. և այլ երկերի:

ԿԼԵՅՄՅՈՆՈՎ Իվան Տերենտևիչ (1898–1938), խորհրդ. հրթիռ. տեխնիկայի աշխ–ների կազմակերպիչ–ղեկ–ներից: Սոց. աշխ. հերոս (1991, հետմահու): Գազադինամիկայի լաբորատորիայի (1932–33) և Հրթիռ. ԳՀԻ–ի (1933–37) պետ: Բռնադատվել է, գնդակահարվել է, հետագայում արդարացվել:

ԿԼԵՅՆ (Klein) Ռոման (1858–1924), գերմանացի ճարտ.: Օգտագործել է նոր նյութեր և հորինվածքներ: Մոդեռնացված դաս. ոգով նախագծել է Ա. Ս. Պուշկինի անվ. կերպարվ–ի թանգարանը (1898–1912), Բորոդինոյի կամուրջը (1912), նոր գոթ. ոճով՝ հանրախանութ (1908, այժմ՝ Կենտր. հանրախանութ, Մոսկվա):

ԿԼԵՅՆ Ֆելիքս (1849–1925), գերմանացի մաթեմատիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1895): Աշխ–ները վերաբերում են երկրչփ–յանը (մեծապես նպաստել նրա զարգացմանը), հանրահաշվին, ֆունկցիաների տեսությանը:

ԿԼԵՅՆՄԻԽԵԼ Պյոտր Անդրեևիչ (1793–1869), ռուս. պետ. գործիչ, կոմս (1839), հետևազորի գեն. (1841): 1842–55–ին՝ հաղորդակցության ուղիների և հաս. շենքերի գլխ. կառավարիչ, ղեկավարել է Ս. Պետերբուրգ–Մոսկվա երկթղ–ու շին–յունը, «Ռուսական զորքի զենքի և հագուստի պատմական նկարագրությունը» (հ. 1–30, 1841–62) ժող–ի կազմման աշխ–ը:

ԿԼԵՅՍՏՈԳԱՄԻԱ (< հուն. kleistos – փակ և gamos – ամուսնություն), բույսերի ինքնափոշոտումը և ինքնաբեղմնավորումը չբացվող (կլեյստոգամ) ծաղիկներում (օր.՝ գետնանուշի, մանուշակների տարբեր տեսակների, հինդաղկի), որոնց կոկոնները միանգամից փոխարինվում են պտղի: Երբեմն այդ բույսերում կատարվում է խաչաձև փոշոտում:

ԿԼԵՆՅԵ (Klenze) Լեո ֆոն (1784–1864), գերմանացի ճարտ–քաղաքաշինարար: Հանդիսավոր մոնումենտալ կառույցներում հետևել է հինհուն. օրինակներին (Պրոպիլեյը՝ Մյունխենում, 1846–60): Կ–ի նախագծով կառուցվել է Ս. Պետերբուրգի Նոր Էրմիտաժը: Քաղաքաշին. աշխ–ների (այդ թվում՝ Մյունխենում, 1816–ից) հիմքում հատակագծման հստակ տրամաբանությունն է և կանոնականությունը:

ԿԼԵՈՄԵՆՈՍ III (Kleomenes, մ. թ. ա. մոտ 260–219), Սպարտայի թագավոր՝ մ. թ. ա. 235–222–ին: Իրականացրել է բարեփոխումներ, բեկանել պարտքեր, ավելացրել լիիրավ քաղաքացիների թվաքանակը ևն:

ԿԼԵՈՆ (Cleon, մ. թ. ա. 470–422), ժողովրդավար. խմբավորման արմատ. թևի աթենացի առաջնորդ: Պելեպոնեսյան պատերազմի ժամանակ Սպարտայի դեմ ռազմ. գործողությունների ակտիվացման կողմնակից: Զոհվել է սպարտացիների դեմ մարտում:

ԿԼԵՈՊԱՏՐԱ (Cleopatra), թագուհիներ Հին Եգիպտոսում: **Կ. I** (մ. թ. ա. մոտ 215–176), *Պտղոմեոսների* տոհմից: **Կ. III** (մ. թ. ա. 160–ի և 155–ի միջև–101), Պտղոմեոս VIII–ի կինը և գահակիցը: **Կ. VII** (մ. թ. ա. 69–30), Պտղոմեոսների հարստության վերջին ներկայացուցիչը: Պտղոմեոս XI–ի դուստրը, Պտղոմեոս XII Դիոնիսոսի քույրը, կինը և գահակիցը՝ մ. թ. ա. 51–ից: Իշխանության համար պայքարել է ամուսնու դեմ: Մ. թ. ա. 48–ին աքսորվել է Ասորիք, 47–ին վերադարձել *Հուլիոս Կեսարի* օգնությամբ: Կեսարի սպանությունից (մ. թ. ա. 44) հետո դարձել է Մարկոս Անտոնիոսի դաշնակիցն ու սիրուհին (մ. թ. ա. 37–ին՝ կինը). նրան աջակցել է Օկտավիանոսի դեմ պայքարում: Մ. թ. ա. 31–ին **Կ. VII** գլխատել է տվել Անտոնիոսի՝ խաբեությամբ գերած Հայոց *Արտավազդ Բ* արքային: *Ակտիումի ճակատամարտում* (մ. թ. ա. 31) պարտվելուց հետո Անտոնիոսը, ապա Կ. VII–ն ինքնասպան են եղել: Կ. VII–ի կերպարն արտացոլվել է համաշխ. (Վ. Շեքսպիր, Բ. Շոու) և հայ (կապված Արտավազդ Բ–ի ողբերգության հետ, Ն. Զարյան, Վ. Դավթյան և ուր.) գրկ–յան մեջ, արվ–ում (Զ. Տիեպոլո, Պ. Ռուբենս և ուր.): Հանրահայտ է ռեժ. Զ. Լ. Մանկևիչի «Կլեոպատրա» կինոնկարը:

ԿԼԵՍՏԻԼ (Klestil) Թոմաս (1932–2004), Ավստրիայի դաշն. նախագահ՝ 1992–ից: 1987–92–ին՝ ԱԳՆ գլխ. քարտուղար:

ԿԼԵՐ (Clair, Շոմետ) Ռենե (1898–1981), ֆրանսիացի կինոռեժ.: Նկարահանել է ավանգարդիստ. ֆարսա–էքսցենտրիկ ֆիլմեր («Ընդմիջում», 1924, ևն), քնարաերգիծական, երբեմն՝ սատիր. կինոկատակերգություններ [«Ծղոտե գլխարկ», 1927, «Փարիզի տանիքների տակ», 1930, «Մեծ զորախաղեր», 1955, «Դը Լիլի նահանգիստը» (1957, խորհրդ. էկրանին՝ «Փարիզի արվարձանում»), «Աշխարհի ողջ ոսկին», 1961, ևն], որոնց նաև սցենարիստն է: Կ–ի արվ–ին բնորոշ են նուրբ դիտողականությունը, վառ երևակայությունը, հումորը և երաժշտականությունը:

ԿԼԵՐԿ (Klerk) Ֆրեդերիկ Վիլեմ դե (ծ. 1936), ՀԱՀ–ի նախագահ՝ 1989–94–ին, փոխնախագահ՝ 1994–ից: 1978–ից վարել է մի շարք նախարար. պաշտոններ: Ազգ. կուս–յան առաջնորդ՝ 1989–ից: Խաղաղության Նոբելյան մրց. (1993):

ԿԼԵՐՄՈՆ–ՖԵՌԱՆ (Clermont–Ferrand), ք. Ֆրանսիայում, Պյուի դե Դոմ դեպարտամենտի վարչ. կենտրոնը և Օվեռն պատմ. մարզի գլխ. ք–ը: Բն.՝ 141 հզ. (2012):

ԿԼԵՐՈ (Clairaut) Ալեքսիս Կլոդ (1713–1765), ֆրանսիացի մաթեմատիկոս–աստղագետ: Փարիզի ԳԱ (1738), Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. (1754) անդամ: Աշխ–ները վերաբերում են դիֆերենցիալ հավասարումներին, Լուսնի շարժման տեսությանը և Երկրի ձևին:

ԿԼԵՐՈՆ (Clairon, Կլեր Ժոզեֆ Իպոլիտ Լեռիս դը Լատյուդ, 1723–1803), ֆրանսիացի դերասանուհի: 1743–66–ին՝ «Կոմեդի Ֆրանսեզ» (Փարիզ) թատրոնի դերասանուհի: Լուսավոր. կլասիցիզմի ներկայացուցիչ: Կ–ի արվ–ը բարձր են գնահատել Դ. Դիդրոն, Վոլտերը, Դ'Ալամբերը:

ԿԼԻՄԱ. (հուն.՝ klima – թեքություն, ենթադրվում է՝ Երկրի մակերևույթի թեքությունն արեգակի ճառագայթների նկատմամբ), երկրագնդի որևէ վայրին հատուկ եղանակների բազմամյա ռեժիմը՝ նրա բոլոր վիճակները: Կ–ի հիմն. առանձնահատկությունները պայմանավորված են արեգակն. ճառագայթման ներթափանցման,

օդ. հոսանքների շրջանառության և տեղանքի մակերևույթի բնույթով: Աշխարհագր. գործոններից տարածաշրջանի Կ–ի վրա առլգն ազդեցություն են թողնում տեղանքի լայն–յունն ու երկայն–յունը, ծովին մոտիկությունը, լեռնագրությունն ու բուսածածկույթի առանձնահատկությունները, ձյան և սառույցի առկայությունը, մթն–ի աղտոտվածությունը: Դրանք բարդացնում են Կ–ի լայնութենական գոտիականությունն ու նպաստում նրա տեղային տարբերակների առաջացմանը:

ԿԼԻՄԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գիտ–յուն կլիմայի, նրա տիպերի առաջացման, տարած. բաշխվածության և, ըստ ժամանակի, փոփոխությունների մասին:

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐ, երկրագնդի գոտիներ, որոնք միմյանցից տարբերվում են կլիմայի ձևավորման յուրահատուկ պայմաններով: Կ. գ. կլիմ. շրջանացման ամենախոշոր միավորներն են: Առաջացումը պայմանավորված է մթն–ի ընդհ. շրջանաձև գոտիների գոյությամբ:

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ, քարտեզներ, որոնք հավասարագծերի օգնությամբ ցույց են տալիս տարածքի կլիման՝ ըստ բազմամյա, տարեկան, սեզոն., ամսական տվյալների:

ԿԼԻՄԱՅԱՎԱՐԺՈՒՄ, **ակլիմատիզացիա** (< լատ. ac (ad) – դեպի, համար և *կլիմա*), կենդանի օրգանիզմի հարմարումը գոյության նոր պայմաններին՝ նոր կենսահամակեցություններին: Կ. լինում է բնական՝ կենդանիների միգրացիա, բույսերի սերմերի տարածումը նոր վայրեր, և արհեստ. (կենդանիների և բույսերի ներմուծման դեպքում): Կլիմայավարժված օրգանիզմները կարող են նոր պայմաններում տալ կենսունակ սերունդ: Մարդու Կ. նոր կլիմ. պայմաններին հարմարվելն է:

ԿԼԻՄԱՏՐՈՆ, տարբեր աշխարհագր. գոտիներին համապատասխանող կլիմ. պայմանների արհեստ. վերարտադրման համար նախատեսված սրահ: Պատրաստում են թափանցիկ նյութերից: Կ–ում աճեցնում են ոչ միայն բույսերի առանձին տեսակներ, այլև ստեղծում որոշակի գոտիների համար բնորոշ բուս. համակեցություններ:

ԿԼԻՄԱՔՍ (հուն.՝ klimax – սանդուղք), 1. (կենսբ.) շրջակա միջավայրի և բուս. համակեցության հավասարակշռության կայուն վիճակը, երբ վերջինիս կազմը տեսականորեն հարաբերականորեն հաստատուն է: 2. Մարդու կյանքի շրջան, որին բնորոշ է հետաճումը՝ սեռ. համակարգի ֆունկցիայի նվազումը՝ օրգանիզմի տարիքային փոփոխությունների ընդհ. ֆոնի վրա:

ԿԼԻՄԵՆՏ ՄՄՈԼՅԱՏԻՉ (ծ. թ. անհտ–1164–ից հետո), Կիևի մետրոպոլիտ՝ 1147–54–ին, գրող: Պայքարել է Բյուզանդիայից ռուս. եկեղեցու անկախացման համար:

ԿԼԻՄԵՆՏ ՕԽՐԻԴԱՑԻ (մոտ 840–916), սլավոն լուսավորիչ, բուլղ. հին գրկ–յան հիմնադիրներից, ստեղծել է օխրիդյան գր. դպրոցը, որն զբաղվել է թարգմ–յուններով:

ԿԼԻՄՈՎ Ալեքսեյ Ֆիլիպովիչ (1878–1940), ռուս անասնաբույժ–անատոմ: Գիտ. դպրոցի հիմնադիր: ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1940): Աշխ–ները վերաբերում են ընտանի կենդանիների օրգանների կառուցվածքի և էվոլյուցիայի հարցերին: Հեղինակ է «Ընտանի կենդանիների անատոմիա» աշխ–յան: ԽՍՀՄ Պետ. մրց. (1952, հետմահու):

ԿԼԻՄՈՎ Դմիտրի Միխայլովիչ (ծ. 1933), ռուս մեխանիկոս: ՌԳԱ ակադ. (1992, թղթ. անդամ՝ 1991–ից): 1990–2004–ին՝ ՌԳԱ մեխանիկայի հիմնահարցերի ինստ–ի տնօրեն, «ՌԳԱ տեղեկագիր. Պինդ մարմնի ֆիզիկա» ամսագրի գլխ. խմբ.: Աշխ–ները վերաբերում են հոլակային (գիրոսկոպ.) համակարգերի մեխանիկային:

ԽՍՀՄ (1976), ՌԴ (1994) Պետ., ԵԳԱ Բ. Պասկալի մրց–ներ:

ԿԼԻՄՈՎ Վլադիմիր Յակովլևիչ (1892–1962), ռուս կոնստրուկտոր: Ինժեներա–ավիացիոն ծառայության գեն–մայոր (1944): ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1953): Սոց. աշխ. հերոս (1940, 1957): Կ–ի ղեկավարությամբ ստեղծվել են շարժիչներ՝ Վ. Մ. Պետլյակովի, Ա. Ս. Յակովլևի, Ս. Ա. Լավոչկինի, Վ. Մ. Մյասիշչևի կոնստրուկցիաներով ինքնաթիռների համար:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1943, 1946, 1949):

ԿԼԻՄՏ (Klimt) Գուստավ (1862–1918), ավստրիացի գեղանկարիչ: Հեղինակ է զարդարուն խորհրդանշ. պատկերների, դիմանկարների (Ա. Բլոխ–Բաուեր, 1907, 1912, ևն), մոդեռն ոճի բնանկարների՝ խճանկար. գունաթղթերով:

ԿԼԻՄՈՒԿ Պյոտր Իլյիչ (ծ. 1942), ԽՍՀՄ տիեզերագնաց–օդաչու (1973), ավիացիայի գեն–մայոր (1978): ԽՄ հերոս (1973, 1975): Թռիչքներ է կատարել «Սոյուզ–13» (1973–ի դեկտ.), «Սոյուզ–18» տիեզերանավերով և «Սալյուտ–4» (1975–ի մայիս–հուլիս) ուղեծրակայանով, «Սոյուզ–30» տիեզերանավով և «Սալյուտ–6» (1978–ի հունիս–հուլիս) ուղեծրակայանով: ԽՍՀՄ Պետ. մրց. (1978, 1981):

ԿԼԻՆԳԵՐ (Klinger) Մաքս (1857–1920), գերմանացի գեղանկարիչ, գրաֆիկ, քանդ.: Սիմվոլիզմի ներկայացուցիչ: Գործերում կենս. սուր խնդիրների արծարծումը զուգորդել է երևակայականին, միստիկային և հոռետեսությանը («Դրամաներ», օֆորտների շարք, 1883, «Ի. վան Բեթհովենի հուշարձանը», 1899–1902, ևն):

ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՄԱՀ, սահման. (տերմինալ) վիճակ, երբ բացակայում են կյանքի անկնայտ նշանները (սրտի գործունեություն, շնչառություն), մարում են ԿՆՀ–ի ֆունկցիաները, սակայն հյուսվածքներում պահպանվում են նյութափոխանակության շարժընթացները: Տևում է մինչև 5 րոպե:

ԿԼԻՆԿԵՐ (գերմ.՝ Klinker), 1. (շին.) բարձր ջերմաստիճանում թրծված, անջրաթափանց, մեծ ամրության աղյուս. օգտագործվում է ճանապարհները, նաև արդ. շինությունների հատակները սալարկելու համար: 2. Մինչև եռակալումը թրծված ցեմենտ. հումքի կարծր կտորներ: 3. Մետաղագործ., դժվարահալ եռակալված զանգված, բազմամետաղ. հանքանյութի մշակման մնացորդ: 4. (Սպորտ.) ուս. նպատակներով օգտագործվող մարզ. ակադեմ. թիանավ:

ԿԼԻՈ, ինը մուսաներից մեկը հուն. դիցյան մեջ, պատմության հովանավորուհին: Պատկերվել է պապիրուսի կամ մագաղաթի գալարը ձեռքին:

ԿԼԻՈՆԵ, **ծովային հրեշտակ**, ծով. թիոտանի փափկամարմինների ցեղ: Երկ.՝ մինչև 5 *սմ*: Հայտնի է 4 տեսակ: Գիշատիչ են: Զկների, որոշ անատամ կետերի կեր են:

ԿԼԻՉԵՎ Իզզաթ (1923–2006), թուրքմեն գեղանկարիչ: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1973): Ռուսաստանի գեղարվ–ի ակադ–ի ակադ. (1988): Սոց. աշխ. հերոս (1983): Գործերն աչքի են ընկնում վեհակերտությամբ («Իմ Թուրքմենիա», 1963–65, շարք, ևն), հուզ. գուն. գամմայով («Վաղը տոն է», 1972): ԽՍՀՄ Պետ. մրց. (1967):

ԿԼԻՊԵՐ (հոլ.՝ klipper, անգլ.՝ clip – վազել), մինչև XIX դ. օգտագործվող ծով. արագընթաց առագաստանավ, որը փոխադրել է թանկարժեք բեռներ (թեյ, համեմունքներ, բուրդ) և ուղևորներ:

ԿԼԻՍԹԵՆԵՍ, մ. թ. ա. VI դ–ի օրենսդիր Աթենքում: Գլխավորել է Պիսիստրատյանների բռնապետության դեմ շարժումը և մ. թ. ա. 510–ին սպարտացիների օգնությամբ տապալել այն: 509–ից կատարել է ժողովրդավար. բարեփոխումներ, որոնք վերացրել են տոհմ. կարգի վերջին մնացորդներն Աթենքում: Ժողովրդավարության հակառակորդների և բռնապետության հաստատելու փորձերի դեմ պայքարելու համար կիրառել է **օստրակիսմոս** (հուն., քաղաքացիների վռնդումը 10 տարով՝ ժող. ժողովի որոշմամբ):

ԿԼԻՏԳՈՐ (Klitgaard) Սոգենս (1906–1945), դանիացի գրող: Հեղինակ է «Տրամվայում նստած է մարդը» (1937) սոցիալ., «Բալլադ Նյուտորվի մասին» (1940), «Աստվածային առօրյա» (1942) հակաֆաշիստ. թեմանեերով վեպերի:

ԿԼԻՏԵՄՆԵՍՏՐԱ, *Ագամեմնոնի* կինը հուն. դից–յան մեջ: Մինչ Ագամեմնոնը Տրոյայում էր, Կ. կապ է հաստատել նրա զարմիկ Էգիսթեսի հետ և նրա օգնությամբ սպանել վերադարձած ամուսնուն: Կ–ին և նրա սիրեկանին սպանել է որդին՝ Օրեստեսը: Կ–ի ճակատագիրը ներկայացվել է Էսքիլեսի, Սոֆոկլեսի և Էվրիպիդեսի ողբերգություններում:

ԿԼԻՏՅԻՆԳ (Klitzing) Կլաուս ֆոն (ծ. 1943), գերմանացի ֆիզիկոս: ՌԳԱ արտ. անդամ (1994): Աշխ–ները վերաբերում են պինդ մարմնի ֆիզիկային: Հայտնաբերել է *Հոլլի էֆեկտը*: Նոբելյան մրց. (1985):

ԿԼՅԱԶՄԱ, գետ ՌԴ եվրոպ. մասում՝ Օկայի ձախ վտակը: Երկ.՝ 686 *կմ*, ավազանը՝ 42,5 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը գետաբերանից 185 *կմ*^{3}/*վ*–յամբ՝ 147 *մ*^{3}/*վ*: Վերին հոսանքում կա ջրամբար: Նավարկելի է 302 *կմ*: Կ–ի ափին է Վլադիմիր ք–ը:

ԿԼՅԱՉԿԻՆ Յուրի Ստեպանովիչ (1934–2000), ռուս քիմիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1991): ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ. (1991): Աշխ–ները վերաբերում են պոլիմեր. նյութերի բնագավառին, հիմնականում՝ օլիգոմերների հիմքի վրա բաղադրյալ նյութերի մշակմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1979):

ԿԼՅՈՒԶԵՐԵ (Cluseret) Գյուստավ Պոլ (1823–1900), ֆրանսիայի քաղ. գործիչ: Փարիզի կոմունայի (1871) անդամ. ապրիլին ղեկավարել է նրա պաշտպ–յունը: 1860–ին՝ Ջ. *Գարիբալդիի* բանակի կամավորական: 1861–65–ին՝ ԱՄՆ–ի քաղաքաց. պատերազմի ժամանակ, մարտնչել է Հյուսիսի բանակի շարքերում: 1866–67–ին՝ իռլանդ. ֆենիանների շարժման մասնակից:

ԿԼՅՈՒԻՏԵՆՍ (Cluytens, Կլյուիտանս) Անդրե (1905–1967), բելգիացի դիրիժոր: 1943–ից՝ Փարիզի կոնսերվատորիայի համերգ. ընկ–յան, ֆրանսիայի ազգ. ռադիոյի և հեռուստատեսության, 1960–ից՝ Բելգիայի ազգ. սիմֆ. նվագախմբերի դիրիժոր: Փարիզի «Օպերա–կոմիկ»–ի գեղ. ղեկ. (1947–ից): Երկացանկում՝ Յ. Հայդնի, Վ. Ա. Մոցարտի, Լ. վան Բեթհովենի, Դ. Միոյի,

Ա. Ժոլիվեի, Օ. Մեսսիանի և ուր. երկերից: Բայրոյթի փառատոնին (1955) մասնակցած ֆրանսիացի առաջին դիրիժորն է:

ԿԼՅՈՒՀԵՎԿԱՅԱ ՍՈՊԿԱ, Եվրասիայի ամենաբարձր (4750 *մ*) և ամենաակտիվ գործող հրաբուխը Կամչատկայում: Կան սառցադաշտեր: Ստորոտին գործում է հրաբխագիտ. կայան: Վերջին ժայթքումը՝ 2013-ին:

ԿԼՈԱԿԱ, (լատ.՝ cloaca), 1. մի շարք ողնաշարավորների (որոշ բոլորաբերանների և ձկների, բոլոր երկկենցաղների, սողունների, թռչունների, միանցքանի կաթնասունների) վերջնադու լայնացած մասը: Կ-ի մեջ բացվում են միզածորանները, սեռ. ծորանները և միզափամփուշտը: 2. Կեղտաջրերի հոսքի ստորգետնյա խողովակ:

ԿԼՈԴ (Claude) Ալբեր (1899–1983), բելգիացի կենսաքիմիկոս: 1923–49-ին աշխատել է ԱՄՆ-ում: Առաջիններից է կիրառել տարբերակիչ ցենտրիֆուգման մեթոդը՝ ենթաբջջ. կառուցվածքների հետազոտման համար: Հաստատել է, որ օքսիդացման կենսընթացները (այսպես կոչված՝ բջջ. շնչառությունը) տեղի են ունենում միտոքոնդրիաներում: Նոբելյան մրց. (1974, Ջ. Է. *Պալադեի* և Ռ. Ռ. *Դե Դյուվի* հետ):

ԿԼՈԴԵԼ (Claudel) Պոլ Լուի Շառլ Մարի (1868–1955), ֆրանսիացի գրող, դիվանագետ: Ֆրանսիայի ակադ-ի անդամ (1946): Հեղինակ է «Ոսկի գլուխ» (1890), «Բաժանում հարավային արևի տակ» (1906) պիեսների, «Պատանդը» (1911), «Չոր հաց» (1918), «Ստորացված հայրը» (1920) եռերգության, «Հինգ մեծ ներբողներ» (1910), «Քինվորական պոեմներ» (1922) և այլ ժող-ների, «Սրբերի օրացույցը» (1925) չափածո երկերի շարքի, որոնք հագեցած են աստվածաշնչյան թեմաներով, «Արևելքի ճանաչումը» (1900) ակնարկների ժող-ի, «Բանաստեղծական արվեստը» (1907) աշխ-յան, «Մեկնություններ ու պարզաբանումներ» (հ. 1–8, 1962–67) կրոն. երկի և այլ գործերի:

ԿԼՈԴԻՈՍ (Klodius, մ. թ. ա. 93–52), հռոմեացի ժող. տրիբուն՝ մ. թ. ա. 58-ին: Օրենքներ է առաջարկել պլերեյներին անվճար հաց բաժանելու, ցենզորների իշխանությունը սահմանափակելու մասին:

ԿԼՈՆ (հուն.՝ klon – ճյուղ, շառավիղ), բջիջների կամ օրգանիզմների պոպուլացիաներ, որոնք սերում են ընդհ. նախնուց՝ անսեռ բազմացման ճանապարհով: Կ. միկրոօրգանիզմների գենետիկայում հաշվառման հիմն. միավորն է: Բջիջների կլոնավորումը կիրառում են ուռուցքաբանության մեջ, մարմնային (սոմատիկ) բջիջների գենետիկայում: Բույսերի Կ-ի ստացման նոր մեթոդը նրանց աճեցումն է 1 բջջից՝ բջջ. կուլտուրայի կիրառմամբ:

ԿԼՈՊՇՏՈԿ (Klopstock) Ֆրիդրիխ Գոտլիբ (1724–1803), գերմանացի բանաստեղծ: Հեղինակ է «Մեսսիադա» (հ. 1–4, 1748–73) հոգևոր էպիկ. պոեմի, «Ադամի մահը» (1757), «Սողոմոն» (1764), «Դավիթ» (1772) աստվածաշնչյան թեմաներով դրամաների, «Հերմանի ճակատամարտը» (1769), «Հերմանը և իշխանները» (1784), «Հերմանի մահը» (1787) պատմ. եռերգության, «Նրանք, այլ ոչ թե մենք» (1790) օդանների ժող-ի՝ նվիրված XVIII դ-ի ֆրանս. հեղ-յանը:

ԿԼՈՊՈՏՈՎ, Բորիս Եվգեննիչ (1905–1964), ռուս նավաշինարար: Նրա ղեկավարությամբ կառուցվել է «Լենին» առաջին ատոմ. սառցահատը (1959, ԽՍՀՄ):

ԿԼՈՐ ՈՐԴԵՐ, տես *Նեմատոդներ*:

ԿԼՈՐ ՊԱՐ, փակ շրջանի դասավորությամբ կատարվող հայկ. պար: Ունի պարզ և բարդ պարաձևեր: Կ. պ-երից յուրաքանչյուրն ունի իր անունը, պարաքայլը, պարեղանակը, կատարման ժամանակը, տեմպը, ռիթմը և նպատակը: Բնորոշ է Հայաստանի բոլոր ազգագր. շրջաններին:

«ԿԼՈՐ ՄԵՂԱՆ», հաս. քննարկման ձև կամ որևէ հարցի լուսաբանում, որի ժամանակ մասնակիցներն արտահայտում են (հիմնականում՝ կլոր սեղանի շուրջ) իրենց կարծիքները: Անվանումը կապված է բրիտների արքա Արթուրի (V–VI դդ.) անվան շուրջ հյուսված Արթուրյան լեգենդների հետ:

ԿԼՈՐԱԳԼՈՒԽՆԵՐ, ագամաների ընտանիքի մողեսների սեռ: Երկ.՝ 8–25 *սմ*: Հայտնի է 30 տեսակ՝ Հվ-արլ. Եվրոպայում և Ասիայում: 2 տեսակ և 1 ենթատեսակ պահպանվում են:

ԿԼՈՐԱՔԻԹ ԼՈՂԱԿՏՅԱՐ (Phalaropus lobatus), լողակտցարների ընտանիքի թռչուն: Չվող է, հազվագյուտ: Մարմնի երկ.՝ 18–19, թևերի բացվածքը՝ 32–41 *սմ*, կ. զ.՝ 27–30 *գ*: Կտուցը փոքր է, սև, ասեղանման: Ապրում է փոքր ջրափոսերում, լճակներում, լճերում: Մնվում է անողնաշարներով:

ԿԼՈՒԲՈՎ Ալեքսանդր Ֆեոդորովիչ (1918–1944), ռուս օդաչու: Կապիտան (1944): ԽՄ հերոս (1944, 1945՝ հետմահու): ՀՄՊ-ի ժամանակ կործանիչ ավիացիայում՝ էսկադրիլիայի հրամ., գնդի հրամ-ի օգնական: Վարել է 95 օդ. մարտեր, անձամբ խփել է 31, խմբով՝ 19 ինքնաթիռ:

ԿԼՈՒԳԵ (Kluge) Հանս Գյունտեր ֆոն (1882–1944), գերմանացի գեն-ֆլդմ. (1940): ԵՀՊ-ի ժամանակ Լեհաստանի ու Ֆրանսիայի դեմ պատերազմներում և խորհրդա-գերմ. ճակատում՝ բանակների, 1941–43-ին՝ «Կենտրոն» բանակների խմբի հրամ., 1944-ին՝ Արևմուտքի զորքերի գլխ. հրամ.: 1944-ի հակահիտլեր. դավադրության մասնակից: Ինքնասպան է եղել:

ԿԼՈՒԵ (Clouet), Վերածննդի դարաշրջանի ֆրանսիացի գեղանկարիչների, դիմանկարիչների ընտանիք: 1. **Ժան Կ.** (մոտ 1480 կամ 1485–1540/41), Ֆրանցիսկ I թագավորի առաջին նկարիչը (1523-ից): Հեղինակ է սուր բնութագր., հանդիսավոր դիմանկարների («Ֆրանցիսկ I», մոտ 1525–35, ևն): 2. Որդին՝ **Ֆրանսուա Կ.** (մոտ 1516/20–1572), ստեղծել է նուրբ հոգեբ., գեղանկարչ. վարպետությամբ աչքի ընկնող դիմանկարներ («Ելիզավետա Ավստրիացի», մոտ 1571), զուսպ, նրբագեղ գծանկարներ («Կառլոս IX», 1566, ևն): Կ-ների դիմանկարչ. արվ-ը ֆրանս. Վերածննդի գագաթներից է:

ԿԼՈՒԶՈ (Clousot) Անրի Ժորժ (1907–1977), ֆրանսիացի կինոռեժ.: Կ-ի «Ոսկերիչների առափնյակը» (1947) դետեկտիվ կինոնկարով սկզբնավորվել է «սև ֆիլմերի» ժանրը ֆրանս. կինոյում: Ստեղծել է հոգեբ. «Սատանու հիներ», «Ճշմարտություն», «Սարսափի գինը», նաև «Պիկասոյի գաղտնիքը» կինոնկարները:

ԿԼՈՒԺԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ Բաբեշ-Բոլյայի անվան, հիմնադրվել է 1872-ին Ռումինիայի Կլուժ-Նապոկա ք-ում՝ որպես հունգ. համալսարան, 1919-ից՝ ռում.: 2014-ին ուներ շուրջ 41 հզ. ուսանող: Համալսարանի գրադարանում պահվում են Եղիսաբեթուպոլիս (այժմ՝ Դումբրվեն) հայաքաղաքից այստեղ բերված 62 հայ. գրչագրեր և Գեղայի պատմության թանգարանին պատկանած մի քանի տասնյակ հայ. այլ ձեռագրեր:

ԿԼՈՒԺ–ՆԱՊՈԿԱ (Cluj-Napoca), ք. Ռումինիայում, Կլուժ ժուդեցի վարչ. կենտրոնը: Բն.՝ 309 հզ. (2012):

ԿԼՈՒԽՈՐԻ ԼԵՌՆԱՆՑՔ, հատում է Մեծ Կովկասի Գլխ. կամ Գրբաժան լ-շղթան: Բարձր.՝ 2781 *մ*: Կ. լ-ով է անցնում Ռազմասուխումյան ճանապարհը:

ԿԾԻԿԱԵՐԻԿԱՄԱԲՈՐԲ, գլոմերուլոնեֆրիտ, երիկամ. կծիկների անոթների բորբոք. ախտահարում: Տես նաև *Երիկամաբորբ*:

ԿԾՄԱԽՈՏ (Botriochloa), **միրուսաբույս, միրուքախոտ**, դաշտավայրակազգիների (հացազգիներ) ընտանիքի խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 25 տեսակ, ՀՀ-ում՝ 2 (սովոր. և կովկաս.)՝ Կոտայքի, Արագածոտնի, Շիրակի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի և այլ մարզերում, Երևանի շրջակայքում: Կերաբույս է:

ԿԾՈՅԱՆ Արծրուն Սարգսի (1907–1978), բժշկության պատմաբան: Աշխ-ները վերաբերում են հայ բժշկության պատմության հարցերին: Հայտնաբերել և հրատարակել է XIII դ-ի հայ բժշկապետ Գրիգորիսի «Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց» (1962) աշխ-ը: ՀԽՍՀ բժշկապատմաբանների ընկ-յան նախագահ (1964–78):

ԿԾՎԻՉ, ծովաբողկ, ժախուկ, կաղամբազգիների (խաչածաղկավորներ) ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 2 տեսակ՝ Եվրասիայում, ՀՀ-ում՝ 1՝ գրեթե բոլոր մարզերում: Բանջարաբույս է (արմատները պարունակում են C վիտամին, եթերայուղեր, ֆիտոնցիդներ): Բերքատվությունը՝ 100–300 *գ/հա*:

ԿԾՎՈՒԿ, կաղամբազգիների (խաչածաղկավորներ) ընտանիքի երկամյա կամ բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 6 տեսակ, ՀՀ-ում՝ 1՝ Լոռու, Գեղարքունիքի, Տավուշի, Սյունիքի և այլ մարզերում, Երևանի շրջակայքում: Դեղաբույս է: Ուտելի են տերևները, արմատները, մատղաշ ընձյուղները:

ԿԿՎԱՆՄԱՆՆԵՐ, թռչունների կարգ՝ 2 ենթակարգով՝ **տուրակներ և կկուներ** (1 ընտանիք): Հայտնի է 150 տեսակ՝ լայնորեն տարածված:

ԿԿՎԱՎՈՒՇ (Polytrichum), **բազմագես**, կկվավուշազգիների ընտանիքի տերևագոդուն. մամուռների ցեղ: Հայտնի է ավելի քան 100 տեսակ, ՀՀ-ում՝ 6՝ գրեթե բոլոր մարզերում: Առաջացնում է կանաչ, գորշականաչավուն կամ կապտագորշավուն խիտ կամ փուխր ճիմ: Երկտուն է: Բազմանում է սպորներով:

ԿԿՈՒՆԵՐ (Cuculidae), կկվանմանների կարգի թռչունների ընտանիք: Երկ.՝ 15–70 *սմ*: Հայտնի է 30 տեսակ. բազմաքանակ են արևադարձներում: ՀՀ-ում հանդիպում է 2 տեսակ՝ սովոր. և փուփուլավոր Կ.: Սեփ. բույն չեն հյուսում, ձվադրում են այլ թռչունների բներում (բնային մակաբուծականություն): Ոչնչացնում են անտառ. վնասատուներին: ՀՀ-ում փուփուլավոր կկվի բնադրման փաստը հաստատվել է 2004–05-ին:

ԿՀԱՍԻ, մոն-քմերյան ժողղ Հնդկաստանում (1,1 մլն, 2001) և Բանգլադեշում (80 հզ.): Բաժանվում է բուն Կ-ի, ջայնտյա, պնար և այլ խմբերի: Լեզուն՝ կհասի: Հիմնականում բողոքական են, կան նաև հինդուականներ:

ԿՀԱՐԱԳՊՈՒՐ (Kharagpur), ք. Հնդկաստանի Արմ. Բենգալիա նահանգ–ում: Բն.՝ շուրջ 200 հզ. (2012):

ԿՂԱՐՋՔ, Կաղարջք, Կալարջք, Կլարճք, գվռ Մեծ Հայքի Գուգարք նահանգ–ում: Մ. թ. ա. VIII դ–ի սկզբից ընդգրկվել է Ուրարտու թագավորության, ապա՝ Մեծ Հայքի կազմում: Արշակունյաց թագավորության անկումից (428) հետո մտել է Վրաց. մարզպանության մեջ: VIII դ–ի վերջին Կ–ում հաստատվել են Բագրատունիները: X դ–ի վերջից Կ. միացվել է վրաց Բագրատունիների թագավորությանը: XI դ–ի սկզբին այն նվաճել է Բյուզանդիան, XVI դ–ից՝ օսմ. թուրքերը: 1878–ից Կ. անցել է ցար. Ռուսաստանին, 1921–ին՝ դարձյալ Թուրքիային:

ԿՂԵՄԵՍ I (Clemens), **Կղեմես Հռոմեացի** (ծ. թ. անհտ–մոտ 101), 70 առաքյալներից, Հռոմի պապ՝ մոտ 92–մոտ 101–ին, եկեղեցու հայրերից և ուսուցիչներից, սուրբ նահատակ: Նրան են վերագրվում «Կղեմեսիններ» շարքը և այլ աշխ–ներ, որոնցից «Կղեմես Հռոմեացու առաջին ուղերձը կորնթացիներին» թուղթը հաստատապես Կ. I–ինն է: Համաձայն վարքագրության՝ նահատակվել է Տավրիդյան Խերսոնեսում (այժմյան Սևաստոպոլ ք–ի շրջագծում): Կ. I միակ Հռոմի պապն է, որին սրբադասել է ՌՈՒԵ–ն:

ԿՂԵՄԵՍ V (մոտ 1260–1314), Հռոմի պապ՝ 1305–ից: Ֆրանսիայի Ֆիլիպ IV թագավորի ճնշմամբ իր նստավայրը 1309–ին տեղափոխել է Ավինյոն՝ սկզբնավորելով Հռոմի պապերի Ավինյոնյան գերությունը: 1312–ին արձակել է Տամպլիերների միաբանությունը (ուխտը):

ԿՂԵՄԵՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑԻ Տիտոս Փլաբիոս (Clemens Alexandrinus, Titus Flavius Clemens, մոտ 150–մոտ 215), աստվածաբան, փիլ., Ալեքսանդրյան աստվածաբան. դպրոցի առաջնորդ: Ձգտել է համադրել հելլեն. մշակույթն ու քրիստ. հավատը: Հեղինակ է «Դաստիարակ», «Ստրոմատիս» և այլ ստեղծագործությունների:

ԿՂԵՄԵՍ ԳԱԼԱՆՈՍ (1610–1666), իտալացի աստվածաբան, փիլ., հայագետ: ***Թոմմա Աքվինացու*** հետևորդներից: Կաթոլիկության քարոզելու նպատակով շրջագայել է հայաշատ վայրերում, սովորել հայ.: Կ. Պոլսում հիմնադրել է դպրոց (1641–44), հայ աշակերտներին դասավանդել կրոն, լեզուներ: Հեղինակ է «Քերական եւ տրամաբանական ներածութիւն...» (հայ., 1645), որը տրամաբ–յան հայ. առաջին տպագիր դասագիրքն է (երկի քերակ–յան մասը գրել է Սիմեոն Ջուղայեցու քերական. սկզբունքներով), «Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ» 2 երկերի (լատ. և հայ., հ. 1, 2, 1650, 1658), որտեղ շարադրել է նաև հայոց պատմությունը՝ հիմք ստեղծելով Արմ. Եվրոպայում Հայաստանի քաղ. և եկեղեց. պատմության վերաբերյալ սխալ տեղեկությունների տարածման, որոնք գիտ. գրկ–յան մեջ հայտնի են որպես «հայկական սխալներ». հերքվել են XVIII դ–ի վերջին:

ԿՂԵՄՈՒՐՔ, լ–անցք Հայկ. լ–աշխարհում՝ Հայկ. Տավրոս լ–շղթայի կենտր. մասում՝ 1360 *մ* բարձր–յան վրա: Տիգրիս գետի ավազանը կապում է Արածանիի հովտի հետ: Կ–ով է անցնում Դիարբեքիր–Ռեշ–Դարխին–Դիադին–Գենչ տեղ. նշանակության ճանապարհը: Հս. մասում է Ոլոր բերդը:


ԿՂՋԻՆԵՐ, ջրով շրջապատված ցամաքի տեղամասեր: Մայրցամաքներից տարբերվում են համեմատաբար փոքր չափերով: Հանդիպում են առանձին և խմբերով: Ըստ տեղադրության՝ լինում են օվկիանոս., ծով., լճային և գետ., ըստ ծագման՝ մայրցամաք. (մերձափնյա, մայրցամաք. ծանծաղուտ., ստորջրյա լանջավոր) և ինքնուրույն (հրաբխ., բուստային ևն):

ԿՂՄՈՒԽ, ձվախոտ, աստղածաղկազգիների (բարդածաղկավորներ) ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 100 տեսակ՝ Եվրասիայում, Աֆրիկայում, հիմնականում՝ Միջերկրածովայքում, ՀՀ–ում՝ 12՝ գրեթե բոլոր մարզերում: Կ–ից պատրաստած դեղամիջոցները խորխաբեր են: Մի քանի տեսակներ գեղազարդիչ են:

ԿՃՈՅՃԱՆ Նավասարդ (ավազանի անունը՝ Սամվել, ծ. 1957), արք. (2006): Արարատյան հայրապետ. թեմի առաջնորդ. փոխանորդ (1999): ԳՀԽ անդամ (2000), ՀՀ ԳԱԱ (2002), ԵՊԲՀ (2005) պատվ. դ–ր: Ամերիկայի կենսագր. ինստ–ի միացյալ մշակութ. համաձայնագրի Խաղաղության միջազգ. մրց. (2002), մի շարք շքանշաններ:

ԿՃՈՒՃ, պուտուկ, կավե աման՝ ջուր, կաթ տաքացնելու, ճաշ եփելու, մթերք պահելու նպատակով: Դեռևս հին քարի դարում Կ–ներ պատրաստել են հում կավից, ապա թրծել: Զարդարվում են երկրչփ., բուս., կենդ., մարդկանց վերադիր ու փորագիր պատկերներով: Լինում են կանթով կամ առանց դրա:

ԿՄԱԽՔ, մարդու և կենդանիների օրգանիզմներում կարծր հյուսվածքների ամբողջություն. մարմնի հենարանն է և այն պաշտպանում է մեխ. վնասվածքներից: Մի շարք անողնաշարների Կ. սովորաբար արտաքին խեցու կամ կուտիկուլայի տեսքով է: Ներքին Կ. բնորոշ է որոշ անողնաշարների (սպիկուլաներ) և ողնաշարավորների (գանգ, ողնաշար և վերջույթների Կ.): Մարդու Կ. բաղկացած է 200 ոսկրից:



Մարդու կմախքը. 1. գանգ, 2. անրակ, 3. թիակ, 4. բազկոսկր, 5. ողնաշար, 6. կոնքոսկրեր, 7. ազդրոսկր, 8. ոտնաթաթի ոսկրեր, 9. սրունքոսկրեր, 10. ձեռնաթաթի ոսկրեր, 11. ծղիկոսկր և ճաճանչոսկր, 12. կողոսկրեր, 13. կրծոսկր

ԿՅԱՆՔ, 1. մատերիայի գոյության հատուկ ձև. առաջացել է նրա զարգացման որոշակի փուլում: Ի տարբերություն անկենդան բնության՝ Կ–ին բնորոշ է նյութափոխանակությունը: Տես նաև ***Կյանքի ծագումը***: 2. Կենդանի օրգանիզմի (մարդ, կենդանի, բույս) ֆիզիոլոգ. վիճակ՝ ծնունդից (աճ, զարգացում) մինչև նրա մահն ու քայքայումը: 3. Մարդու ֆիզ. և հոգևոր ուժերի դրսևորման ամբողջությունը:

ԿՅԱՆՔԻ ԱՐԺԵՔԻ ՅՈՒՅՉ (բյուջետային ցուցիչ), բնակչության որոշակի խմբերի սպառած ապրանքների ու ծառայությունների՝ սահմանված կազմի գների ու սակագների ցուցիչ: Արտահայտում է սպառման ծախսերի հիմն. բաղադրիչների շուկայական արժեքի փոփոխությունները՝ կապված ապրանքների մանրածախ գների ու ծառայությունների սակագների բարձրացման հետ: Կիրառվում է շարունակվող ինֆլյացիայի պայմաններում բնակչության եկամուտների ճշտման համար:

ԿՅԱՆՔԻ ԱՐՄԱՏ, *ժեն–շեն* (չին. – կյանքի արմատ, բառացի՝ մարդ – արմատ), արալիազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույս: Աճում է ՌԴ–ում (Հեռավոր Արևելք, Պրիմորիեի և Խաբարովսկի երկրամասեր), Չինաստանի հս–արլ. ստվերախիտ անտառներում, Հս. Կորեայում: Աճեցնում են որպես դեղաբույս: Արմատի պատրաստուկներն օգտագործում են հոգնածության և այլ դեպքերում: Կ. ա. պահպանվում է որպես հազվագյուտ մնացուկ. բույս:

ԿՅԱՆՔԻ ԾԱԳՈՒՄԸ, նախակյանքի և կյանքի ձևերի առաջացումը Երկրի երկրբ. պատմության ընթացքում: Ըստ նորագույն տվյալների՝ կյանքը Երկրի վրա ծագել է ավելի քան 3,8 մլրդ տարի առաջ: Համարվում է, որ Երկրի վրա կյանքը կարող էր ծագել «կենսաբանական մեծ պայթյունի» հետևանքով՝ շուրջ մեկ միլիոն տարվա ընթացքում: Նման կարճ երկրբ. ժամանակահատվածում տեղի է ունեցել բուռն քիմ. էվոլյուցիա, որի արդյունքում առաջացել է մոլ–ների քիրալությունը (բացարձակ հարթ հայելում իրենց արտացոլանքի հետ մոլ–ների անհամատեղելիության հատկությունը), և տեղի են ունեցել նրանց վերափոխումներ՝ առաջնային օրգ. մոլ–ների՝ նախաածխաջրածինների առաջացումով: Բարձր ջերմաստիճանի, սաստիկ ԱՄՃ–ի (օզոնոլորտը, օզոնի պաշտպանիչ շերտն առաջացել են հետագայում՝ Երկրի մթնում թթվածնի կոնցենտրացիայի աճին զուգընթաց), հաճախակի մթն. պարպումների ազդեցությամբ նախակենսբ. միացությունները բարդացել են: Ձախ պտտող ամինաթթուների պոլիմերմամբ առաջացել են առաջին ***ապիպակուցները***, ի հայտ են եկել առաջին ազոտային հիմքերը՝ ***նուկլեոտիդները***: Ֆլուկտուացիաների արդյունքում կոացերվատների կաթիլներում առաջացել են բազմամոլ. կառուցվածքներ, որոնցից առավել կայունների միավորմամբ առաջացել են ածման և տարբալուծման ունակ մոլ–ներ. վերջիններս դարձել են օրգանիզմների նախատիպեր: Մոլ–ների առաջացման–տարբալուծման հատկությունը պայմանավորել է նախն. ***նյութափոխանակությունը***: Ծայրահեղ աննպաստ միջավայրում հետագա ընտրության ճանապարհով պահպանվել են միայն այն գոյացությունները, որոնցում ձևավորվել է սպիտակուցի մատրիցային սինթեզի ունակությունը, որը կատարվել

է հայելային անհամաչափ մոլ. ագրեգատների մեջ պոլինուկլեոտիդների՝ ԴՆԹ և ՌՆԹ–ի ներդրմամբ: Այդպիսի նպաստավոր ֆիզքիմ. պայմանները լայն հնարավորություն են ստեղծել միացությունների փոփոխության և առաջնային օվկիանոսում կյանքի բազմազան ձևերի առաջացման համար: Մոտ 2 մլրդ տարի առաջ ի հայտ են եկել կենդանի օրգանիզմների 1–ին բջիջները, որից էլ, ըստ էության, սկսվել է կենսբ. էվոլյուցիան: Կ. ծ–ման մասին առավել ճանաչված են ռուս կենսաքիմիկոս Ա. Ի. *Օպարինի* և անգլիացի գիտնական Ջ. Բ. *Հոլդեյնի* վարկածները:

«ԿՅԱՆՔԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ», փիլ. հոսանք (XIX դ–ի վերջ–XX դ–ի սկիզբ), որի ելակետ. հասկացությունը «կյանքն» է՝ որպես բնական–օրգ. սկիզբ՝ ի հակադրություն մեխ. դատողականի (Ֆ. Նիցշե, Լ. Կլագես, Թ. Լեսինգ, Լ. Ֆրոբենիուս և ուր.), որը մշակույթի անհատ. անկրկնելի կերպարներում դրսևորվող տիեզ. ուժ է (Վ. Դիլթեյ, Գ. Զիմմել)՝ մեխ. «քաղաքակրթությանը» (Օ. Շպենգլեր) հակադրվող: «Կ. փ.» որոշակի ազդեցություն է թողել նորհեգելականության, էկզիստենցիալիզմի, պերսոնալիզմի վրա:

ԿՅՈՔԿԵ (Køpke) Քրիստեն (1810–1848), դանիացի գեղանկարիչ, գրաֆիկ: Հեղինակ է նուրբ գույներով դիմանկարների, բնանկարների («Օստերբրոն արշալույսին», 1836, ևն), ժանր. տեսարանների («Ծխախոտ վաճառողը», 1831, ևն):

ԿՅՈԼԵՆ (նորվեգ.՝ Kyolen – բառացի՝ ողնուց), **Խյոլեն**, բարձրավանդակ Շվեդիայում և Նորվեգիայում, Սկանդ. լ–ներում՝ Տրոնհեյմ ֆյորդից հս: Երկ.՝ 600 *կմ*, բարձր.՝ մինչև 2123 *մ*: Տարածված են սառցաղաշտերը, լեռն. տունդրաները և տայգան: Կան ազգ. պարկեր:

ԿՅՈԼԵՐ (Köler) Յոհան (1826–1899), էստոնացի գեղանկարիչ: Էստ. ազգ. գեղանկարչության դպրոցի հիմնադիրը: Հեղինակ է դիմանկարների («Մայրը», մոտ 1863–64), ժանր., կրոն., դից. կոմպոզիցիաների («Արթնացում կախարդական երազից», 1864–65, ևն): Բնանկարներում նկատելի է ուշակադեմ. գեղանկարչության ոգին:

ԿՅՈՊԵՆ (Köppen) Վոլֆգանգ (1906–1996), գերմանացի գրող: 1949–ից՝ ԳԴԵմՀ–ում: Հեղինակ է «Պատը շարժվում է» (1935), «Աղավնիները խոտի մեջ» (1951), «Մահ Հռոմում» (1954) վեպերի, ինքնակենսագր. «Պատանեկություն: Հուշեր» (1971) վիպակի, «Սարսափ» (1987) պատմվածքների ժող–ի, գր. էսսեի:

ԿՅՈՐԿԻԶՅԱՆ (Գեորգիզյան) Արսեն (1886–1977), բանասեր, պատմաբան, մանկավարժ: 1923–ից՝ ԱՄՆ–ում: Հեղինակ է «Վասպուրականի հերոսամարտը. 1915 ապրիլ 7–1915 մայիս 7» (1965), «Մեր ազգային գոյապայքարը 1915–1922 թթ. զուլումի տարիներուն» (1967, ԹՄՄ «Հայկաշեն Ուզունյան» գր. մրց.), «Պավղիկյան–թոնդրակեցիներու շարժումը Հայոց Առաքելական եկեղեցւոյ մէջ...» (1970) և այլ աշխ–ների:

ԿՅՈՒԴԼԱՆԴ (Kydland) Ֆինն Էդլինգ (ծ. 1943), նորվեգացի տնտեսագետ: Աշխ–ները վերաբերում են տնտ. քաղ–յան ու ցիկլ. տատանումների փոխադարձ կապի հիմնախնդիրներին: Նորելյան մրց. (2004, Է. *Պրեսկոտի* հետ):

ԿՅՈՒԼԵՄԵՐՅԱՆ Բարկեն (ավազանի անունը՝ Հարություն) Ավետիքի (1868–1936), եկեղեց. գործիչ, պատմաբան, բանասեր, խմբ.: 1928–ից՝ Մեծի Տանն Կիլիկիո Բարկեն Ա–ի աթոռակից կաթողիկոս: 1905–06–ին խմբագրել է «Լոյս» (Կ. Պոլիս), 1918–19–ին՝ «*Տաւրոս*» (Բոստոն) պարբ–ները: 1927–ին ձեռնարկել է «*Միտն*» հանդեսի վերահրատարակումը, 1932–ին հիմնադրել ու խմբագրել է «*Հասկ*» հանդեսը: Գրել է Հայ եկեղեցու և գաղթավայրերի պատմությանը, բանասիր–ազգագր., կրոնաաստվածաբան. հարցերին վերաբերող աշխ–ներ, կազմել կրոնագիտ–յան ձեռնարկներ, ձեռագրացուցակներ:

ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ Գալուստ Սարգսի (1869–1955), մեծահարուստ, բարեգործ, ճարտարագետ–նավթագործ: Ռոպեր *Կյուլպենկյան* հորեղբայրը: 1911–12–ին հիմնադրել է Թուրքիայի նավթ. ընկ–ը: 1930–32–ին՝ ՀԲԸՄ նախագահ: Եղել է Իրաքի նավթ. ընկ–յան բաժնետերերից: Փարիզում և Լոնդոնում՝ Թուրքիայի դեսպանատների խորհրդական: 1956–ին, Կ–ի 1953–ի կտակի համաձայն, Լիսաբոնում հիմնադրվել է Գալուստ Կյուլպենկյան հիմնարկություն բարեսիր. և գիտամշակութ. հաստատությունը (մասնաճյուղեր են գործում Լոնդոնում, Փարիզում), որի կազմում ստեղծվել է [Գևորգ Եսայանի (Կ–ի դստեր ամուսինն է, կտակարար մարմնի անդամ) ջանքերով] Հայկ. հայմայնքների բաժանմունք:

ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ (Կյուլպենկ) Հրանտ (1880–1968), գեղանկարիչ: Հեղինակ է բնանկարների («Բանկար», 1930–ական թթ., ՀԱՊ), նատյուրմորտների, դիմանկարների, որոնց հատուկ են գույների սահուն անցումները, ջերմ մթն–ը:

ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ Ռոպեր (Ռոբերտո) Վահանի (1923–2009), հաս. գործիչ, արևելագետ, աղբյուրագետ: Պորտուգալիայի պատմության ակադ–ի (1989), ՀՀ ԳԱԱ արտ. (1992) անդամ: Գալուստ *Կյուլպենկյանի* եղբորորդին: «Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության» (Լիսաբոն) վարչության խորհրդի անդամ (1977): Աշխ–ները վերաբերում են հայ–պորտուգ. միջնադար. առնչություններին, Եվրոպայում հայ վաճառականների գործունեությանը և Իրանի ու Հնդկաստանի հետ կապերին: Կ–ի նախաձեռնությամբ 1959–ին հիմնադրվել է «Գալուստ Կիւլպենկեան հիմնարկութեան հայկական մատենաշար»–ը (ցայսօր՝ ավելի քան 1000 անուն):

ԿՅՈՒԽԵԼԲԵԿԵՐ Վիլհելմ Կառլովիչ (1797–1846), գերմանացի ռուսագիր գրող, դեկաբրիստ: Հեղինակ է «Բայրոնի մահը» (1824), «Ռիլեևի ստվերը» (1827) օդաների, «Հռենոսյան ընկերներին» (1821) բանաստեղծությունների ժող–ի, «Արգոսցիներ» (1822–25), «Պրոկոֆի Լյապունով» (1834) ողբերգությունների, «Վերջին Կոլոնան» (1832–42) վեպի և այլ գործերի:

ԿՅՈՒՆՈ (Cugnot) Նիկոլա Ժոզեֆ (1725–1804), ֆրանսիացի գյուտարար: Առաջիններից է շոգեմեքենան օգտագործել որպես փոխադրամիջոց. նրա պատրաստած շոգեսայլը (1769–70) պահվում է Փարիզի արվ–ների և արհեստների ցուցահանդեսում:

ԿՅՈՒՍՅՈՒՐ, կղզի Ճապոն. կղզեխմբի հվ–ում: Տարածքը՝ շուրջ 42 հզ. *կմ*², բն.՝ 12 մլն (2012): Բարձր.՝ մինչև 1788 *մ*: Կան գործող հրաբուխներ (Ասո, Կիրիսիմա): Խոշոր ք–ները՝ Կիտակյուսյու, Ֆուկուոկա, Կագոսիմա, Նագասակի, Կումամատո:

ԿՅՈՒՍՏԻՆ (Custine) Աստոլֆ Լուի Լեոնոր մարկիզ դը (1790–1857), ֆրանսիացի գրականագետ, ճանապարհորդ: Ֆրանս. քաղ. մտքի մեջ ռուսատյացության շարժման հիմնադիրը: Նիկոլայ I–ի հրավերով այցելել է Ռուսաստան: Հեղինակ է «Ռուսաստանը 1839 թվականին» (1843) երկի:

ԿՅՈՒՎԻԵ (Cuvier) Ժորժ (1769–1832), ֆրանսիացի կենդանաբան, կենդանիների համեմատ. անատոմիայի, հնէաբանության և կարգաբանության բարենորոգիչներից: Փարիզի (1795), Ֆրանսիայի (1818) ԳԱ–ների և Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1802): Կենդբ–յան մեջ Կ. *Բերի* հետ ներդրել է «տիպ» հասկացությունը, հաստատել է «օրգանների հարաբերակցության» սկզբունքը, որի հիման վրա վերականգնել է մի շարք բրածո կենդանիների կառուցվածքները: Չի ընդունել տեսակների փոփոխականությունը, բրածո ֆաունաների հաջորդականությունը բացատրել է «աղետների տեսությամբ»:

ԿՅՈՒՎԻԵՅԱՆ ԾՈՒՐԱՆՆԵՐ (Ժ. *Կյուվիեի* անունով), անգամց ողնաշարավոր կենդանիների և մարդու սաղմի լայնական արյունատար անոթներ, որոնք գոյանում են առաջային և հետին երկայն. գլխ. երակների միախառնումից և թափվում են սրտի մեջ:

ԿՅՈՒՏԵՆՅԱՆ (Գյուտենյան) Հայկ Սարգսի (1886–1972), ջութակահար, կոմպոզիտոր: Հավաքել է Արևելքի և բալկան. երկրների ժող. մեղեդիներ: 1905–ից համերգներով շրջագայել է Եվրոպայի և Միջին Արևելքի երկրներում, 1908–09–ին՝ Թիֆլիսում և Կովկասի այլ քաղաքներում: 1918–ից՝ ԱՄՆ–ում: Հեղինակ է ծրագրային սիմֆոնիաների, ջութակի («Հայկական մեղեդի», «Հայկական օրորոցային», «Աշուղ», «Արևելյան երեք պար» ևն), ալտի, դաշնամուրի, ձայնի, նվագախմբի համար երկերի:

ԿՅՈՒՐԱՊԱՂԱՏ, աստիճան և պաշտոն Բյուզանդիայում V–XIV դդ–ում: V դ–ի սկզբին Կ–ներ էին կայսեր. պալատի նյութամատակարարմամբ զբաղվող պաշտոնյաները: Այնուհետև Կ. պալատ. բարձրաստիճան պաշտոնյա էր, կայսեր. պահակախմբի հրամ–ր: VIII դ–ում Կ. վերածվել է սովոր. պատվաստիճանի: Բյուզ. կայսրությունում եղել են հայազգի բազմաթիվ Կ–ներ (Արտավազդ՝ VIII դ., Վարդ՝ IX դ., Լևոն Փոկաս, Վարդաս Սկլերոս՝ X դ., և ուր.): VII–XIII դդ–ում Կ–ի տիտղոս են ստացել նաև Հայաստանի ու Կիլիկիայի մի շարք իշխանավորներ (Համազասպ Մամիկոնյան, Սմբատ Բագրատունի, Դավիթ Սահառունի՝ VII դ., Դավիթ Կյուրապաղատ՝ X դ., և ուր.):

ԿՅՈՒՐԱՍԱՈ (Curacao), կղզի Կարիբյան ծովի Փոքր Անտիլյան կղզեխմբում: Պատկանում է Նիդեռլանդներին: Տարածքը՝ 472 *կմ*², բն.՝ 155 հզ. (2014): Բարձր.՝ մինչև 372 *մ*: Կան նավթավերամշակման ձեռն–ներ: Գլխ. քաղաքը՝ *Վիլեմստադ*:

ԿՅՈՒՐԵՂ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ (375–444), աստվածաբան: Ընդհանր. եկեղեցու հայրապետներից, ՀԱԵ համաքրիստ. տոնելի սուրբ: 412–ից՝ Ալեքսանդրիայի պատրիարք: Կ. Ա–ու աստվածաբանության հիմքում մարդեղության և փրկագործության գաղափարն է, շարունակել է Աթանաս Աղեքսանդրացու հայացքները, պայքարել Անտիոքի դպրոցի ներկայացուցիչների դեմ: Նրա դավան–հակաճառ. աշխ–ներն ուղղված են *արիոսականության* և, հիմնականում, Նեստորի ուսմունքի դեմ: Կ. Ա–ու երկերը հայ. թարգմանվել են V–VIII դդ–ում: Մի շարք գործեր պահ–

պանվել են միայն հայ. թարգմ–յուններով: Հեղինակ է «Գիրք պարապմանց» (հայ. հրտ.՝ 1717) չափածո, «Ճառ» (հայ. հրտ.՝ 1760), «Գիրք գանձուց» և այլ երկերի:

ԿՅՈՒՐԵՂ, ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ (315–386), աստվածաբան: Ընդհանր. եկեղեցու հայրապետներից, ՀԱԵ համաքրիստ. տոնելի սուրբ: 348–ից՝ Երուսաղեմի պատրիարք: Պայքարել է *արիոսականության* դեմ: Հեղինակ է «Կոչումն ընծայութեան կամ Յաղագս երախայից» (ճառերի և քարոզ–ների ժող., հայ. թարգմանվել է V դ–ում, հրտ.՝ 1727–28) երկասիրության:

ԿՅՈՒՐԵՂՅԱՆ Սերգեյ Գրիգորի (ծ. 1936), կառավարման համակարգերի և տեղե–կագիտ–յան բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1995), պրոֆ. (2005): Աշխ–ները վերաբերում են էլեկտրամեխանի–կային, կառավարման և տեղեկագիտ. չափիչ համակարգերին:

ԿՅՈՒՐԻ (Curie) Պիեռ (1859–1906), ֆրան–սիացի ֆիզիկոս: Ի. *Ժոլիո–Կյուրիի* հայրը: Եղբոր՝ Պոլ Ժան Կյուրիի հետ հայտնա–գործել և հետազոտել է *պիեզոէլեկտրա–կանության* երևույթը (1880): Ուսումնա–սիրել է բյուրեղների համաչափության հարցերը: Սահմանել է պարամագնիս. նյութերի մագնիս. ընկալունակության կախումը բացարձակ ջերմաստիճանից (*Կյուրիի օրենք*) և հայտնաբերել այն ջեր–մաստիճանը, որից բարձր ֆեռոմագնիս. նյութերը վերածվում են պարամագնիս. նյութերի (*Կյուրիի կետ*): Կնոջ՝ Մ. *Սկլա–դովսկայա–Կյուրիի* հետ ուսումնասիրել է ռադիոակտիվության երևույթը, հայտնա–գործել պոլոնիումը և ռադիումը: Ներմու–ծել է «ռադիոակտիվություն» տերմինը:

Նոբելյան մրց. (1903, Մ. Սկլադովսկա–յա–Կյուրիի և Ա. Ա. *Բեքերելի* հետ):

ԿՅՈՒՐԻ (Կի, Ci), ռադիոակտիվութ–յան արտահամակարգ. միավոր. կոչ–վել է Պ. *Կյուրիի* և Մ. *Սկլադովսկա–յա–Կյուրիի* անունով: 1 Կի այնպիսի իզոտոպի ակտիվությունն է, որում 1 *վ*–ում կատարվում է տրոհման $3{,}7 \cdot 10^{10}$ գործողություն, այսինքն՝

$$1\ Կի = 3{,}7 \cdot 10^{10}\ Բք.$$

ԿՅՈՒՐԻԻ ԿԵՏ, **Կյուրիի ջերմաստի–ճան**, 2–րդ կարգի ֆազ. անցման ջեր–մաստիճան, երբ կատարվում է նյութի համաչափության հատկությունների թռիչքաձև փոփոխություն: Օր.՝ Կ. կ–ում *ֆեռոմագնիսները* (երկաթ, կոբալտ, նիկել ևն) կորցնում են բնորոշ մագնիս. հատկությունները և վերածվում սովոր. *պարամագնիսների*:

ԿՅՈՒՐԻԻ ՕՐԵՆՔ, x տեսակարար մագ–նիս. ընկալունության կախումը T ջերմաս–տիճանից՝ $x = C/T$ (C–ն Կյուրիի հաստա–տունն է) այն պարամագնիսների համար, որոնց ատոմների մագնիս. մոմենտները միմյանց հետ թույլ են փոխազդում: Հայտ–նաբերել է Պ. *Կյուրին* (1895):

ԿՅՈՒՐԻԿԵ Ա. Բագրատունի (ծ. թ. անհտ–մոտ 1089), Տաշիր–Զորագետի թագավոր՝ 1048–ից: 1065–ին գահանիստ է դարձրել Լոռե ք–ամրոցը: Հայոց կաթողիկոսութ–յունն Անիում վերահաստատելու հույսով 1081–ին օժանդակել է *Բարսեղ Ա. Անեց–ցուն*՝ հաղպատում օծվելու պոռոգից կաթողիկոս: *Կյուրիկյան թագավորության* կիսաանկախ գոյությունը պահպանելու նպատակով 1088–ին ուղևորվել է Խորա–սան, բանակցել Մելիքշահի հետ:

ԿՅՈՒՐԻԿՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, Լոռու թագավորություն, Տաշիր–Զո–րագետի թագավորություն, հայ ավա–տատիր. քաղ. կազմավորում Հս–արլ. Հայաստանում՝ 970–1118–ին: Հիմնադիրն է *Աշոտ Գ Ողորմածի* կրտսեր որդի *Գուր–գենը* (Կյուրիկե): Ընդգրկել է Գուգարաց աշխարհի արլ. գավառները, հիմնակա–նում՝ Տաշիրն ու Զորափորը:

ԿՅՈՒՐԻԿՅԱՆՆԵՐ, հայ թագավոր. հարստություն Տաշիր–Զորագետում X–XII դդ–ում, *Կյուրիկյան թագավորության* տի–րակալները: Հարստության հիմնադիրն է *Աշոտ Գ Ողորմածի* որդի Գուրգենը (Կյուրիկե): Կյուրիկյանների իշխանութ–յունը պայմանական–ժառանգական էր, տիրույթները՝ ավատ.:

ԿՅՈՒՐԻ–ՎԵՅՍԻ ՕՐԵՆՔ, մագնիս. ընկա–լունության կախումը T ջերմաստիճանից՝ $\chi = C/(T-\theta)$ (C–ն նյութի հաստատունն է, θ–ն Կյուրիի կամ *Նեելի կետը*): Կ–Վ. օ. գործում է $T \geq \theta$ ջերմաստիճաններում՝ *պարամագնիսների* համար, որոնք դառ–նում են ֆեռո– կամ հակաֆեռոմագնիսներ, համապատասխան՝ Կյուրիի կամ Նեելի կե–տից ներքև: Հաստատել է Պ. *Վեյսը* (1907):

ԿՅՈՒՐԻՈՒՄ (Curium), Cm, տարրերի պարբեր. համակարգի III խմբի քիմ. տարր: Ակ–տինիդ է, կարգաթիվը՝ 96: Ռադիոակտիվ է, համեմատաբար կայուն իզոտոպը ^{247}Cm (կիսաքայքայման ժամանակամիջոցը՝ ավելի քան $1{,}58 \cdot 10^7$ տարի): Անվանվել է ի պատիվ Պ. *Կյուրիի* և Մ. *Սկլադովսկայա–Կյուրիի*: Արծաթավուն մետաղ է, խտ.՝ 13,51 $գ/սմ^3$, $t_{հալ.}$՝ 1358°C: Արհեստականորեն ստացել են (1944) ամերիկացի ֆիզիկոս–ները: ^{241}Cm իզոտոպն օգտագործում են միջուկ. մարտկոցներում:

ԿՅՈՒՐՃՅԱՆ Մելքոն (Հրանդ, 1859–1915), գյուղագիր, հրապարակախոս: Հեղինակ է «Պանդուխտի կեանքէն» (1888, «Մասիս») նամականու, «Կեանքի մը քայքայումը» (1893), «Երկու վերմակի տակ» (1895), «Խա–նին վերին յարկը» (1909), «Առանց փիլոնի քահանան» (1913) և այլ պատմվածքների, որտեղ նկարագրել է հայ պանդուխտների ողբերգությունը: Մեծ եղեռնի զոհ:

ԿՅՈՒՐՃՅԱՆ Միքայել Սահակի (1879–1965), գրող, հրապարակախոս, խմբ.: 1896–1905–ին՝ Ալեքսանդիրայի *«Ազգայ բեմ»* պարբ–ի խմբ., 1905–ին՝ *«Շիրակ»* (Վահան *Թեքեյանի* հետ), 1920–23–ին՝ *«Արեւ»* պարբ–ների հիմնադիր–խմբ.: Հեղինակ է «Մարտիկ աղա» (1898–99) երգիծավեպի, «Ֆրանքօ–թրքական պա–տերազմ» (Երվանդ *Օտյանի* հետ, 1909), «Փրկանք» (Տիգրան *Կամսարականի* հետ, 1910) պիեսների, «Ի խորոց սրտի խօսք ընդ պաշտելոյն» (1960) բանաստեղ–ծությունների, «Քսան տարի ետք կամ Ֆրանկօ–թուրքական պատերազմը կը շարունակուի» (1961) պատմվածքների ու նորավեպերի ժող–ների և այլ գործերի:

ԿՅՈՒՐՈՍ II ՄԵԾ (ծ. թ անհտ–մ. թ. ա. 530/529), Աքեմենյանների պետության 1–ին թագավորը՝ մ. թ. ա. 558–ից: Գրավել է Մեդիան, Լիդիան, Փոքր Ասիայի հուն. ք–պետությունները, Միջին Ասիայի զգալի մասը: Մ. թ. ա. 539–ին գրավել է Բաբելո–նը և Միջագետքը: Զոհվել է Միջին Ասիա կատարած արշավանքի ժամանակ:

ԿՅՈՒՐՈՍ ԿՐՏՍԵՐ (ծ. թ. անհտ–մ. թ. ա. 401), Պարսից արքա *Դարեհ II*–ի կրտսեր որդին: 408–ից՝ փոքրասիական սատրա–պությունների (Լիդիա, Մեծ Փռյուգիա, Կապադովկիա) փոխարքա: Հոր մահից (404) հետո ապստամբել է թագավոր հռչակված եղբոր՝ Արտաքսերքսես II–ի դեմ՝ գահին տիրելու նպատակով: Կ. Կ–ին օժանդակած 10 հզ. հույները Հայաստանի տարածքով մեկնել են հայրենիք:

ԿՆԳՈՒՄ, կզաքիսազգիների ընտանի–քի կաթնասուն կենդանի: Սարմնի երկ.՝ մինչև 32, պոչինը՝ մինչև 10 *սմ*: Ապրում է Եվրասիայում և Հս. Ամերիկայում: Ոչնչացնում է մնասակար կրծողների: Մորթին օգտագործում են արդյունագոր–ծության մեջ:

ԿՆԵԲԵԼ, Մարիա Օսիպովնա (Իոսիֆի, 1898–1985), ռուս. դերասանուհի, ռեժ., մանկավարժ: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1958): Ի. Ն. *Կնեբելի* դուստրը: 1924–ից՝ ՄԳԱԹ–ի, 1950–68–ին՝ Մանկ. կենտր. թատրոնի ռեժ. (1955–60–ին՝ գլխ. ռեժ.): Բեմադրել է Վ. Ս. Ռոզովի «Բարի երթ» (1954), Ա. Ն. Օստրովսկու «Տաղանդներ և երկրպագուներ» (1969) և այլ պիեսներ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1978):

ԿՆԵՎ–ԵՆԱԳԵԼԻ ՌԵԱԿՑԻԱ, էթիլենի ածանցյալների ստացման ռեակցիա: Իրականացնում են հիմքերի առկա–յությամբ ալդեհիդները և կետոնները ակտիվ մեթիլեն. խումբ պարունակող միացության հետ կոնդենսացնելով: Կ. ռ. կիրառվում է օրգ. սինթեզում, քիմիադե–ղագործ. և օծանելիքի արդ–յան մեջ: Կ. ռ. հայտնագործել է գերմանացի քիմիկոս Է. Կնևենագելը (1865–1921) 1896–ին:

ԿՆԻԴՈՍՊՈՐԻԴԻՈՒՄՆԵՐ, նախակեն–դանիների տիպ: Մակաբուծվում են ձկնե–րի և անողնաշարների մարմնի խոռոչ–ներում, հյուսվածքներում և բջիջներում:

ԿՆԻՊՊԵՐ Անդրեյ Լվովիչ (1931–2010), ռուս. երկրաբան: ՌԳԱ ակադ. (1992): Աշխ–ները վերաբերում են ծալքավոր գոտի–ների տարածաշրջ. երկրբ–յան և տեկտո–նիկայի հարցերին: ՌԴ Պետ. մրց. (1995):

ԿՆԻՊՊԵՐ–ՉԵԽՈՎԱ Օլգա Լեոնար–դովնա (1868–1959), ռուս. դերասանուհի: ՌԽՖՍՀ (1928), ԽՍՀՄ (1937) ժող. ար–տիստ: Ա. Պ. *Չեխովի* կինը: 1898–ից՝ ՄԳԹ դերասանուհի: Առաջինն է մարմնավորել Չեխովյան կանանց կերպարները (Մաշա՝ «Երեք քույր», Ռանևսկայա՝ «Բալենու այ–գին», ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1943):

ԿՆԻՍ (Knies) Կառլ Գուստավ Ադոլֆ (1821–1898), գերմանացի տնտեսագետ: Քաղաքատնտ–յան պատմ. դպրոցի հիմ–նադիրներից:

ԿՆԻՔ, 1. փորագրված նշաններով գոր–ծիք՝ մեկ այլ բանի վրա փորագրությունը դրոշմելու համար: 2. Կնիքի թողած դրոշ–մահետքը: 3. Բուսաբ–յան մեջ՝ իգական բույսի սեռ. նշանը՝ վարսանդը:

«ԿՆԻՔ ՀԱՒԱՏՈՅ», դավանաբան. ժող.: Կազմվել է Հայոց կաթողիկոս *Տոմիտաս Ա. Աղցեցու* (615–628) օրոք՝ Հայ եկեղեցու դիրքերի ամրապնդման նպատակով: Ունի հակաքաղկեդոն. բովանդակություն, բաղկացած է 10 գլխից: Կարևոր դեր է խաղացել Հայոց եկեղեցու անկախության և հայ ժողդ–ի ազգ. ինքնուրույնության պայքարում:

ԿՆՃԻԹ, որոշ սողունների (փափուկ կրիա–ներ) և կաթնասունների (կնճիթավորներ, մի շարք միջատակերներ) քթային շարժ–ման ելուն: Կատարում է շնչառ., հոտառ. և շոշափական (փղերի Կ.՝ նաև բռնելու) ֆունկցիաներ:

ԿՆՃԻԹԱՎՈՐՆԵՐ, կաթնասունների կարգ, որոնց խիստ գերաճած վերին շրթունքը, քթին միանալով, առաջացրել է շարժ. *կնճիթ*: Վերին ծնոտի կտրիչներն ուժեղ զարգացած են: Ի հայտ են եկել

էոցենում Աֆրիկայում: Ներկայում Կ–ից մնացել են միայն փղերը: Կ–ի մնացորդներ հայտնաբերվել են նաև Հայաստանում՝ Գյումրիի շրջակայքում:

ԿՆՅԱԶՅԱՆ Աննա Տարիելի (ծ. 1975), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ–ր (2017): Հեղինակ է «Համեմատությունը հեղինակի անհատական ոճում» (2011), «Գենդերային տարբերությունները և կարծրատիպերը երգիծական խոսույթում» (2015) աշխ–ների, համահեղ.՝ «Ակադեմիական անգլերենը լեզվաբանների համար» (2002) դասագրքի:

ԿՆՅԱԶՅԱՆ Արմեն (Արմենակ) Կնյազի (1917–1987), գեղանկարիչ: Ստեղծել է հիմնականում բնանկարներ («Փոթորկից առաջ», 1970, «Առաջին ձյունը», 1975, «Հունձք», 1978, «Վարդի հովիտը», 1982, ևն): Ֆրանսիայի նկարիչների սալոնի արծաթե մեդալ (1980, Փարիզ):

ԿՆՅԱԺՆԻՆ Յակով Բորիսովիչ (1740/42–1791), ռուս դրամատուրգ, բանաստեղծ: Ռուսաստանի ակադ–ի անդամ (1783): Ռուս. կլասիցիզմի ներկայացուցիչ: Հեղինակ է «Դիդոնա» (1769), «Ռոսլավ» (1784), «Վադիմ Նովգորոդսկի» (1789) ողբերգությունների, «Պարծենկոտը» (1784–85) կատակերգության, երգիծ. օպերայի լիբրետոյի:

ԿՆՈԲԵԼԻԱԴՈՐՖ (Knobelsdorff) Գեորգ Վենցեսլաուս (1699–1753), գերմանացի ճարտ.: XVIII դ–ի վաղ կլասիցիզմի նախակարապետ: Կառույցներն աչքի են ընկնում հատակագծման ռացիոնալությամբ, ճակատների խիստ դաս. լուծումներով, ռոկոկո ոճի ինտերիերներով (Սան Սուսի պալատը, Պոտսդամ, 1745–47, ևն):

ԿՆՈՐԵ Դմիտրի Գեորգևիչ (ծ. 1926), ռուս. քիմիկոս և կենսաքիմիկոս: ՌԳԱ ակադ. (1991), ԽՍՀՄ ԳԱ ակադ.՝ 1981 (թղթ. անդամ՝ 1968–ից): ՌԴ բարձրագույն դպրոցի վաստ. աշխատող (2003): Աշխ–ները վերաբերում են շղթ. ռեակցիաների կինետիկային, պեպտիդ. սինթեզի մեխանիզմին, նուկլեինաթթուների և սպիտակուցների նպատակային քիմ. ձևափոխումներին: Լենինյան (1990), ԽՍՀՄ ՆԽ (1987), ՌԴ Կառ–յան (2000), ԽՍՀՄ ԳԱ Մ. Մ. Շեմյակինի անվ. (1988) մրց–ներ:

ԿՆՈՐՈԶՈՎ Յուրի Վալենտինովիչ (1922–1999), ռուս ազգագրագետ, լեզվաբան: Վերծանել է մայաների գիրը: Հեղինակ է Կենտր. Ամերիկայի ազգագրությանը, գրի ինագույն ձևերի վերծանմանը, հինդ. հուշարձաններ Մեհենջո–Դարոյին և Խարապպային, պատմահամեմատ. լեզվաբանությանը վերաբերող աշխ–ների:

ԽՍՀՄ Պետ. մրց (1977):

ԿՆՏԵՂՅԱՆ Սպարտակ Աղասու (1924–1996), ճարտ.: ՀՀ վաստ. ճարտ. (1972): Կառույցներից են՝ Երևանում՝ «Մոսկվա» ամառ. կինոթատրոնի (1966, Թ. Գևորգյանի հետ), մետրոպոլիտենի «Մարշալ Բաղրամյան» կայարանի (1981, Ա. Ջուրաբյանի, Ա. Ազատյանի հետ) շենքերը, Երևանի 2750–ամյակին նվիրված աղբյուր–հուշարձանը (1968, Է. Հովհաննիսյանի հետ), Ուլյանովսկում՝ հուշարձան (1980–ական թթ.) ևն:

ՀԼԿԵՄ (1967), «Տարվա լավագույն նախագիծ» միջազգ. (1995) մրց–ներ:

ԿՆՈՒԴ I ՄԵԾ (Knud den Store, 995–1035), Դանիայի՝ 1018–ից, Անգլիայի՝ 1016–ից, Նորվեգիայի՝ 1028–ից թագավոր՝ Գորմ հարստությունից: Մահից հետո նրա տերությունը կործանվել է:

ԿՆՈՒԴ II, Կնուդ IV (II) Սուրբ (լատ.՝ Canutus, դանիերեն՝ Knud den Hellige, մոտ 1043–1086), Դանիայի թագավոր՝ 1080–ից: Ամրապնդել է քրիստ. եկեղեցու դիրքերը Դանիայում, ընդլայնել ոչ արտոնյալ խավերի իրավունքները: Սպանել են ապստամբ բոնտերը: 1101–ին սրբադասվել է:

ԿՆՈՒՆՅԱՆՑ Բոգդան Միրզաջանի (1878–1911), հաս–քաղ. գործիչ: ՌՍԴԲԿ անդամ՝ 1897–ից: Լյուդվիգ ***Կնունյանցի*** եղբայրը, Վալենտին ***Կնունյանցի*** հայրը: 1901–ին աքսորվել է Բաքու, դարձել ՌՍԴԲԿ Բաքվի և Կովկաս. միութ. կոմիտեների անդամ: Հայ սոցիալ–դեմոկրատների միության (1902) և նրա «Պրոլետարիատ» պաշտոնաթերթի հիմնադիրներից: Մասնակցել է II ինտերնացիոնալի (Շտուտգարտ) վեհաժողովին (1907), ՌՍԴԲԿ IV (Հելսինգֆորս, 1907) համաժողովին: 1910–ին Բաքվում կրկին ձերբակալվել է: Մահացել է բանտում: Սերտ հարաբերություններ է ունեցել Վ. Ի. ***Լենինի*** հետ:

ԿՆՈՒՆՅԱՆՑ Իվան (Հովհաննես) Լյուդվիգի (1906–1990), քիմիկոս–օրգանիկ: Ֆտորօրգ. միացությունների քիմիայի գիտ. դպրոցի հիմնադիր: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1953, թղթ. անդամ՝ 1946–ից), ճարտարագետ, գեն–մայոր (1949): Սոց. աշխ. հերոս (1966): Լյուդվիգ ***Կնունյանցի*** որդին: Աշխ–ները վերաբերում են ֆտոր–, ծծումբօրգ. և հետերոցիկլիկ միացություններին: Մշակել է նոր մոնոմերների, ջերմակայուն պոլիմերների և դեղանյութերի սինթեզի արդ. եղանակներ:

Լենինյան (1972), ԽՍՀՄ Պետ. (1943, 1948, 1950), Անրի Մուասոնի (1986), ՌԴ «Ճանապհում» (2002, «Պերֆտորան» պատրաստուկի համար) մրց–ներ, Լենինի (1966), ԽՍՀՄ Հոկտ. հեղ–յան (1977), Կարմիր աստղի, Աշխ. կարմիր աստղի, Կարմիր դրոշի շքանշաններ:

ԿՆՈՒՆՅԱՆՑ Լյուդվիգ Միրզաջանի (1876/77–1952), հաս–քաղ. գործիչ: ՌՍԴԲԿ անդամ՝ 1897–ից: Բոգդան ***Կնունյանցի*** եղբայրը, Իվան ***Կնունյանցի*** հայրը: Կ–ի նախաձեռնությամբ Բաքվում հիմնադրվել է հայ բոլշևիկների առաջին «***Բանւորի ձայնը***» թերթը: Թղթակցել է Թիֆլիսի «Կայծ» թերթին: Խորհրդ. կարգեր հաստատվելուց հետո աշխատել է նավթի և գազի արդ–յան համակարգում:

ԿՆՈՒՆՅԱՆՑ Վալենտին Բոգդանի (1907–1987), ճարտարագետ–էլեկտրիկ: Բոգդան ***Կնունյանցի*** որդին: 1933–ին ղեկավարել է ԽՍՀՄ ծանր արդ–յան ժողկոմատի կենտր. ռադիոկապի նախագծման և կառուցման աշխ–ները: Ստեղծել է Մոսկվան Դիքսոն կղզուն կապող 1–ին հեռախոսակայանը, մշակել նեղ ջրագծերում ճշգրիտ ռադիոնավավարության «Օկուն» համակարգերը, զբաղվել օդ. և ջր. փոխադրամիջոցների ռադիոկողմնորոշիչ սարքերի կատարելագործման հարցերով:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1946), Կարմիր աստղի շքանշան (1945):

ԿՆՈՒՆՔ, կրոն. ծեսով երեխային ավազանում մկրտելու արարողությունը: Տես ***Մկրտություն***:

ԿՆ–ՔԱԲՈՒՅՀՅՈ, սև լոշտակ, կույս արմատ, դիոսկորևազգիների ընտանիքի միամյա, երկամյա, բազմամյա խոտաբույսերի կամ կիսաթփերի ցեղ: Հայտնի է 2 տեսակ, ՀՀ–ում՝ 1՝ Տավուշի, Լոռու, Սյունիքի մարզերի անտառների բացատներում: Դեղաբույս է: Օգտագործում են որպես միզամուղ, արյունահոսությունը դադարեցնող, ցավը հանգստացնող միջոց:

ԿՆ–ՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, պատմ. գիտ–յան օժանդակ ճյուղ: Ուսումնասիրում է ***կնիքները***: Որպես գիտ–յան առանձին ճյուղ՝ ձևավորվել է XVIII դ–ում: Նպատակը փաստաթղթերի թվագրումն է և իսկության հաստատումը (վրայի կնիքի օգնությամբ): Կ–յան նյութերը կարևոր սկզբնաղբյուր են կիրառ. արվ–ի, ***զինանշանագիտության***, ***դրամագիտության***, ***արձանագրագիտության***, ավանդաբանության, ինն արխիվների պարունակության պարզաբանման համար:

ԿՆ–ՔԱՀԱՅՐ, 1. մկրտված սանի «հոգևոր հայրը»: Կ–ի առկայությունը ***մկրտության*** կարևոր խորհրդանիշներից է: 2. Պասակադրության արարողության ժամանակ այն անձը, որը խաչը պահում է հարսի ու փեսայի գլխավերևում (խաչեղբայր), հարսանիքի և զույգի հետագա կյանքի ընթացքում ուղեկցում նրանց:

ԿՇԵՆԵԿ, **Կռենեկ** (Krenek), Էռնստ (1900–1991), ավստրիացի կոմպոզիտոր, երաժշտագետ, մանկավարժ: 1937–ից՝ ԱՄՆ–ում: Հեղինակ է «Յատկ ստվերի վրայով» (1924), «Ջոնին նվագում էր» (1927) օպերաների, բալետների, սիմֆոնիաների, խմբերգերի, էլեկտրոն. երաժշտության:

ԿՇԵՌՔ, 1. (աստղագիտ., լատ.՝ Libza) կենդանաշրջանի համաստեղություն, երկնքի Հվ. կիսագնդում՝ Հիդրա, Կույս, Օձ, Օձակիր, Կարիճ, Գայլ համաստեղությունների միջև: Հս. միջին լայն–ներից երևում է գարնանն ու ամռանը: 2. (Տեխ.) մարմինների զանգվածները նրանց ծանրության ուժով չափման սարք: Ըստ նշանակման՝ լինում են նմուշային (կշռաքարերի ստուգման), լաբորատոր. (անալիտիկ, միկրոանալիտիկ, փորձանոթ. ևն) և ընդհ. նշանակման, ըստ գործողության սկզբունքի՝ լծակ., զսպանակ., էլեկտրալարվածաչափ., հիդրավլիկ. և հիդրոստատիկ ևն:

ԿՇԵՍԻՆՍԿԱՅԱ Մաթիլդա (Մարիա) Ֆելիքսովնա (1872–1971), ռուս. բալետի արտիստուհի, մանկավարժ: 1890–1917–ին՝ Ս. Պետերբուրգի ***Մարիինյան թատրոնի*** մենակատարուհի (Ավրորա՝ Պ. Ի. Չայկովսկու «Քնած գեղեցկուհի», Էսմերալդա՝ Զ. Պունիի «Էսմերալդա», ևն): 1911–12–ին մասնակցել է Ս. «Դյագիլևի ռուսական բալետի» խմբի ներկայացումներին: 1920–ից՝ Փարիզում:

ԿՇԻՌ, ***ուժ***, որով մարմինն ազդում է հորիզոն. հենարանի (կամ կախոցի) վրա, որը խոչընդոտում է նրա ազատ անկումը: Թվապես հավասար է մարմնի զանգվածի (m) և ***ազատ անկման արագացման*** (g) արտադրյալին՝ P = mg:

ԿՇՌԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, քանակ. քիմ. վերլուծության եղանակ. հիմնված է նյութի զանգվածի ճշգրիտ չափման վրա: Ճշգրիտ կշռված վերլուծվող նմուշի լուծույթի վրա ավելացնում են համապատասխան նյութ, որը որոշվող նյութի հետ նստվածք է առաջացնում: Լուծույթից նստվածքն անջատում և չորացնում են մինչև հաստատուն զանգված:

ԿՈԱԳՈՒԼԱՑՈՒՄ (լատ.՝ coagulatio – մակարդում), **մակարդում**, դիսպերս և հատկապես կոլոիդ համակարգերի մասնիկների միմյանց կպչումը դրանց բախումների ժամանակ՝ բրոունյան շարժման, խառնելու կամ ուժային (օր.՝ էլ.) դաշտում ուղղորդված շարժման, մակարդիչների (կոագուլանտ) ներմուծման հետևան–

քով: Կ. կարևոր դեր է խաղում բնական և կեղտաջրերի մաքրման, արտադր-յան թափոններից արժեքավոր նյութերի կորզման, լատեքսից կաուչուկի անջատման, աննդամթերքների ստացման համար:

ԿՈԱԼԱ, տես *Պարկավոր արջ*:

ԿՈԱԼԵՍՑԵՆՏՈՒՄ (լատ.՝ coalesco – կպչել, միանալ), գազ. միջավայրում (**մառախուղ**) կամ հեղուկում (**էմուլսիա**) գազի բշտիկների կամ հեղուկի կաթիլների միմյանց կպչումը մոլ. ուժերի ազդեցությամբ: Ձրի կաթիլների Կ. անձրևի կամ ցողի տեսքով մթն. տեղումների պատճառներից է: Կ. օգտագործում են փոշիացման եղանակով լաքաներկային ծածկույթը քսելու, ձեթը զտելու և այլ դեպքերում:

ԿՈԱԼԻՑԻԱ, (լատ.՝ coalitio – միություն), **դաշինք**, 1. երկու կամ ավելի պետությունների ռազմ. կամ քաղ. դաշինք՝ միջազգ. հարաբերություններում հարցի կամ հարցերի կարգավորման նպատակով (օր.՝ պետությունների հակահիտլեր. Կ. ԵՀՊ-ի ժամանակ), 2. համաձայնություն մի քանի կուս-յունների միջև՝ նրանց ներկայացուցիչներից կառ-յուն կազմելու նպատակով:

ԿՈԲԱԼԱՄԻՆ, տես *Յիանակորալամին*:

ԿՈԲԱԼՏ (Cobaltum), Co, տարրերի պարբեր. համակարգի VIII խմբի առաջին եռյակի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 27, ա. զ.՝ 58,9332: Անվանումը՝ գերմ. Kobold – «տանոգի» բառից: Վարդագույն երանգով արծաթասպիտակավուն ծանր մետաղ է, խտ.՝ 8,9 $գ/սմ^3$, $t_{հալ.}$՝ 1494°C: Ֆեռոմագնիսական է: Սովոր. ջերմաստիճանում օդում քիմիապես կայուն է: Միներալները հազվագյուտ են, արդյունահանում են նիկելի հանքաքարից: Օգտագործում են հիմնականում համաձուլվածքներ (մագնիս., կրակադիմացկուն, կոռոզիակայուն, գերպինդ) ստանալու համար: Ճառագայթաակտիվ ^{60}Co իզոտոպը կիրառվում է որպես γ-ճառագայթման աղբյուր բժշկության մեջ և տեխնիկայում: Կ. կարևոր է բույսերի և կենդանիների համար, մտնում է B_{12} վիտամինի բաղադրության մեջ:

ԿՈԲԱԼՏԱՅԻՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, մետաղօրգ. միացություններ, որոնցում *կոբալտի* ատոմն անմիջականորեն միացած է ածխածնի ատոմին: Կիրառում են մետաղների, պլաստմասսաների, խեցեղենի երեսպատման համար որպես յուրահատուկ կատալիզորդներ ևն: Բնական Կ. մ. B_{12} վիտամինի համաֆերմենտ. ձևերն են:

ԿՈԲԱԼՏԻ ՀԱՄԱՁՈՒԼՎԱԾՔՆԵՐ, *կոբալտի* հիմքով համաձուլվածքներ: Հիմնականում օգտագործում են բարձր ջերմաստիճաններում աշխատող դետալներ (օր.՝ տուրբոռեակտիվ շարժիչների թիակներ) պատրաստելու համար:

ԿՈԲԱԼՏԻՆ, **կոբալտային փայլ**, միներալ: Քիմ. կազմը՝ CoAsS: Խառնուրդների ձևով պարունակում է նիկել և թելուր: Բյուրեղ. համակարգը խորանարդային է: Վարդագույն է, սպիտակ՝ մետաղ. փայլով: Կարծր.՝ 5,5, խտ.՝ 6400 $կգ/մ^3$: Հանդիպում է հպումամետասոմատիկ հանքավայրերում, ոսկի-քվարց. երակներում, Co-Ni-Ag-Bi-U ֆորմացիայի հանքավայրերում: Կոբալտի ստացման գլխ. հանք. միներալներից է:

ԿՈԲԱՅԱՄԻ Մակոտո (ծ. 1944), ճապոնացի ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են մասնիկների և միջուկների հետազոտություններին, բարձր էներգիաների ֆիզիկային:

Նոբելյան (2008, S. *Մասկավայի* հետ), Սակուրայի (1985) մրց-ներ:

ԿՈԲԱՅԱՄԻ Մասակի (1916–1996), ճապոնացի կինոռեժ., սցենարիստ: Հայտնի է Ճապոնիայի մշակույթի, պատերազմի, ահաբեկչության թեման արծարծող դրամատիկ. կինոստեղծագործություններով [«Որդու պատանեկությունը», 1952, «Անկեղծություն», 1953, «Հաստ պատից այն կողմ», 1953 (սցենարը՝ Կոբո Աբեի), «Ես ձեզ գնում եմ», 1956, «Սև գետը», 1957, «Խարակիրի», 1962, «Ճապոնիայի երիտասարդությունը», 1968 (խորհրդ. էկրանին՝ «Հոգնած մարդու օրիներգը»), «Բոցավառվող աշուն», 1979, «Տոկիոյի դատավարությունը», 1983 (սցենարը՝ Կ-ի, վավերագր.), «Տունն առանց ուտելիքի», 1986 (սցենարը՝ Կ-ի), ևն]:

ԿՈԲԱՅԱՄԻ Տակիձի (1903–1933), ճապոնացի գրող: Հեղինակ է «Բացակա կալվածատերը» (1929), «Խեցգետնորսը» (1929, կինոնկար՝ 1953), որտեղ պատկերել է ձկնորսների կյանքը, կոմունիստների մասին «Կյանքը հանուն կուսակցության» (1933) վիպակների: Սպանվել է ճապոն. ոստիկանների պահակախմբի հետ ընդհարման ժամանակ:

ԿՈԲԵ, ք-ն Վիննգստ Ճապոնիայի Հոնսյու կղզում, Հյոգո պրեֆեկտուրայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,5 մլն (2014): Ճապոնիայի խոշորագույն նվինգստ-ներից է՝ 150 մլն *դ* բեռնաշրջանառությամբ: Զարգացած է գրոսաշրջությունը:

ԿՈԲԵԼՅԱՆ Սուրիկ Խաչիկի (ծ. 1955), անասնաբույժ: Անասնաբուժ. գիտ. դ-ր (2001): Աշխ-ները վերաբերում են ՀՀ-ում բուծվող կիսակոպտաբուրդ ցեղի ոչխարների ոսկր. և մկան. համակարգերի մակրո- և միկրոձևաբանությանը: ՀՀ կենդանաբուժ. ԳԱ անդամ (2009, ակադ. քարտուղար՝ 2014–ից):

ԿՈԲԵՐԳԵՐ (Koberger) Անտոն (մոտ 1445–1513), գերմանացի տպագրիչ, հրտ., գրավաճառ: 1470-ական թթ-ին Նյուրնբերգում հիմնադրել է տպարան. գործել է մինչև 1526-ը, տպագրել շուրջ 250 անուն գիրք (պատկերազարդել են Ա. Դյուրերը, Մ. Վոլգեմուտը և ուր.):

ԿՈԲՋԱՐ, թափառաշրջիկ բանաստեղծ, երգիչ (հաճախ՝ կույր, Ուկրաինայում): Կատարում է սեփ. կամ ժող. երգեր, դումաներ՝ կորզայի, բանդուրի կամ քնարի նվագակցությամբ:

ԿՈԲՋԱՐԵՎ Յուրի Բորիսովիչ (1905–1992), ռադիոտեխնիկայի բնագավառի ռուս գիտնական: ՌԳԱ ակադ. (1991, ԽՍՀՄ ԳԱ ակադ.՝ 1970–ից): Սոց. աշխ. հերոս (1975): Աշխ-ները վերաբերում են վիճակագր. ռադիոտեխնիկային, տատանումների տեսությանը, ռադիոտեղորոշման իմպուլս. մեթոդներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941):

ԿՈԲՋՈՆ Իոսիֆ Դավիդովիչ (ծ. 1937), ռուս. էստրադ. երգիչ: ՌԽՖՍՀ (1980), ԽՍՀՄ (1987), Ուկրաինայի (1991), Կալմիկիայի (2007), Հս. Օսիայի (2008), Մորդովիայի (2015) ժող. արտիստ: ՌԴ Աշխ. հերոս (2016): 1962–ից՝ «Մոսկվա» երգ.-ի մենակատար: Երկացանկում՝ Ա. Բաբաջանյանի, Մ. Թարիվերդիևի, Ա. Ն. Օստրովսկու, ժամանակակից կոմպոզիտորների երգերից: Սպիտակի երկրաշարժին նվիրված ծրագրով հանդես է եկել Երևանում: Էստրադ. երգի միջազգ. փառատոնի 1-ին (1964, Սոպոտ), «Ոսկե Օրփեոս» (1968, Բուլղարիա), ՀամԼԿԵՄ (1976), ԽՍՀՄ Պետ. (1984), ՌԴ Կառ-յան (2011) մրց-ներ, ՀՀ «Մեսրոպ Մաշտոց» (2004) և բազմաթիվ այլ շքանշաններ:

ԿՈԲՐԱՆԵՐ, ասպիդների ընտանիքի խիստ թունավոր օձերի մի քանի սեռերի ընդհ. անվանումը: Վտանգի դեպքում բարձրացնում են մարմնի առջևի 1/3-րդ մասը, լայնացնում պարանոցը և, մի քանի զույգ կողերը իրարից հեռացնելով, գոյացնում են կնգուղ: Իսկական Կ-ի կամ ակնոցավոր օձերի սեռն ընդգրկում է 6 տեսակ՝ տարածված Աֆրիկայում և Ասիայում: Մարմնի երկ.՝ 1,4–2,5 *մ*: Առավել հայտնի է ակնոցավոր օձը (հնդ. Կ.)՝ Հվ. Ասիայում: Աշխարհում ամենախոշոր թունավոր օձը՝ թագավոր. Կ. կամ համադրիադը (երկ.՝ մինչև 5,5 *մ*)՝ Հվ-արլ. Ասիայում: Կ-ին պահում են սերպենտարիումներում, նրանց թույնն օգտագործում են բժշկության մեջ: Միջինասիական Կ. գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ԿՈԳԱՆ (Kogan) Լեոնիդ Բորիսովիչ (1924–1982), հրեա ջութակահար: ԽՍՀՄ ժող. արտիստ (1966): Ջութակի արդի դպրոցի նշանավոր ներկայացուցիչ: Պ. Լ. *Կոգանի* հայրը:

Ջութակահարների Էլիզաբեթ թագուհու անվ. միջազգ. մրցույթի 1-ին (1951, Բրյուսել), Լենինյան (1965) մրց-ներ:

ԿՈԳԱՆ Պավել Դավիդովիչ (1918–1942), հրեա ռուսագիր բանաստեղծ: Բանաստեղծություններում պատկերել է սխրանքի պատրաստ մինչպատերազմ. սերնդի երիտասարդներին («Ամպրոպ», հրտ.՝ 1960): Զոհվել է ռազմաճակատում:

ԿՈԳԱՆ Պավել Լեոնիդովիչ (ծ. 1952), հրեա ջութակահար, դիրիժոր: ՌԴ ժող. արտիստ (1994): Լ. Բ. *Կոգանի* որդին: 1980–83-ին՝ Մոսկվայի կամեր. նվագախմբի դիրիժոր, 1988–89-ին՝ Զագրեբի, 1989–ից՝ Մոսկվայի պետ. սիմֆ. նվագախմբերի գլխ. դիրիժոր և գեղ. ղեկ.: Ղեկավարել է նաև Ս. Պետերբուրգի, Ֆիլադելֆիայի ֆիլհարմոնիկ և այլ սիմֆ. նվագախմբեր:

Յ. Սիբելիուսի անվ. միջազգ. մրցույթի 1-ին (1970, Հելսինկի), ՌԴ Պետ. (1997) մրց-ներ:

ԿՈԳԱՆ Պյոտր Սեմյոնովիչ (1872–1932), հրեա ռուսագիր գրականագետ, քննադատ: Հեղինակ է «Ուրվագծեր արևմտաեվրոպական գրականության պատմության» (հ. 1–3, 1903–10, հայ.՝ 1926), «Հունական գրականություն» (1907), «Ակնարկներ ռուս նորագույն գրականության պատմության» (հ. 1–3, 1908–12) ևն, նաև թատերագիտ. աշխ-ների:

ԿՈԳԻՆԵՐ, **թզուկ կաշալոտներ**, ատամնավոր կետերի ենթակարգի կաթնասունների սեռ: Երկ.՝ 3,4 *մ*, կ. զ.՝ մինչև 400 *կգ*: Հայտնի է 2 տեսակ՝ Համաշխ. օվկ-ի արևադարձ. և բարեխառն գոտիներում: Հանդիպում են հազվադեպ:

ԿՈԳՈՎԻՏ, **Կոգայովիտ**, **Գոգհովիտ**, գվռ Այրարատ նահգ-ում՝ Դարույնք կենտրոնով: Սահմանակից է Մասյացոտն, Ճահկատք, Արտազ, Ծաղկոտն, Բագրևանդ գվռ-ներին: Լեռնագոտիներով սահմանազատված դաշտ է՝ արգավանդ վարելահողերով և մարգագետիններով: Գվռ-ի հս-արմ-ում է Հայաստանի ամենաբարձր (2247 *մ*) և մեծությամբ (33 $կմ^2$) 5-րդ լիճը՝ Գայլատու կամ Ձկնաբեր ծովակը: Եղել է Հայոց արքաների, հատկապես՝ *Արշակունիների* որսատեղիներից: Այնուհետև անցել է Բագրատունիներին. 1554-ին օսմ. սուլթան Սելիմը գրավել է Կ.: Հետագայում 4 այլ գվռ-ների հետ այն կազմել է առանձին փաշայություն՝ *Բայազետ* կենտրոնով՝ Էրզրում նահգ-ի մեջ: Մինչև 1829-ը Կ.

ունեցել է ստվար, գրեթե միատարր հայ բնակչություն: Ադրիանուպոլսի հաշտության պայմանագրից (1829) հետո 4215 հայ ընտանիք Կ–ից գաղթել և բնակություն է հաստատել հիմնականում Սևանի ավազանում: Վանի փաշայի զորքը, քրդերի զինակցությամբ,1877–ի հունիսին կոտորել է Կ–ի հայ բնակչության զգալի մասին, մոտ 2000 մարդու գերեվարել: Կ–ում մնացած հայերը (մոտ 15 200) զոհվել կամ բռնությամբ տեղահանվել են 1915–ին:

ԿՈԴ (ֆրանս.՝ code), պայմանանշանների ամբողջություն և որոշակի կանոնների համակարգ՝ տեղեկությունների պահպանման, հաղորդման և վերամշակման համար: Տեղեկությունների կոդավորման համար առավել հաճախ օգտագործում են տառեր, թվանշաններ, նշաններ [օր.՝ «–» (գիծ) և «·» (կետ)] և դրանց համակցությունները: Կիրառվում է հեռագրության մեջ, համակարգչ. տեխնիկայում, ռազմ. գործում և այլուր: **Հեռագրական Կ.,** հեռագրերում ընդունված նշանակումների պայման. համակարգ, որտեղ յուրաքանչյուր տառին կամ նշանին համապատասխանում է էլ. հոսանքի տարր. առաքումների իր համակցությունը:

ԿՈԴ ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ, կենդանի օրգանիզմների յուրահատուկ ժառանգ. տեղեկությունների «ծածկագրման» միասն. համակարգ նուկլեինաթթուների մոլեկուլներում՝ նուկլեոտիդների հաջորդականության տեսքով: Համառոտագրության նպատակով յուրաքանչյուր նուկլեոտիդ նշանակվում է լատ. կամ հայ. գլխատառերով՝ A (Ա՝ ադենին) G (Գ՝ գուանին), C (Ց՝ ցիտոզին), T (Թ՝ թիմին՝ ԴՆԹ–ում) և U (Ու՝ ուրացիլ՝ մատրիցային ՌՆԹ–ում): ***Կոդոններում*** դրանց եռադաս հաջորդականությունը ներկայացնում է Կ. գ–ի գրաֆիկ. արտահայտությունը: Կ. գ–ի իրականացումը կատարվում է 2 փուլով. 1–ինը (տրանսկրիպցիա), որ տեղի է ունենում բջջակորիզում՝ կատարվում է մատրից. կամ տեղեկատվ. մ–ՌՆԹ–ի սինթեզը՝ ԴՆԹ–ի համապատասխան հատվածների վրա: 2–րդը (տրանսլյացիա) կատարվում է բջջապլազմայում՝ ռիբոսոմների վրա. այդ ընթացքում մ–ՌՆԹ–ի նուկլեոտիդների հերթականությունը վերածվում է ամինաթթուների հերթականությանը սինթեզվող սպիտակուցում: 64 կոդոններից 61–ը կոդավորում են որոշակի ամինաթթուներ, իսկ 3՝ այսպես կոչված կանգկոդոնները որոշում են պոլիպեպտիդ. շղթայի սինթեզի ավարտը: Գենետիկ. կոդը բացահայտել ու վերծանել են ամերիկացի կենսաքիմիկոսներ Մ. Ուն. Նիրենբերգը, Ս. Օչոան և ուր. 1961–65–ին:

ԿՈԴԱԿ (լեհ.՝ Kudak), XVII–XVIII դդ–ի ամրոց: Կառուցել են լեհերը 1635–ին՝ Ուկրաինան Զապորոժյան Սեչից մեկուսացնելու համար: Գրավել են զապորոժցիները: Քանդվել է 1711–ին՝ ***Պրուտյան համաձայնագրով***: Տեղում այժմ Հին Կայդակի բնակավայրն է:

ԿՈԴԱՅ (Kodaly) Զոլտան (1882–1967), հունգար կոմպոզիտոր, բանահավաք, մանկավարժ: Հունգար. կոմպոզիտոր. դպրոցի և երաժշտ. դաստիարակության համակարգի հիմնադիրներից: Հեղինակ է «Խարի Յանոշ» (1926) օպերայի, նաև վոկալ–սիմֆ. գործերի, մանկ. խմբերգերի, ժող. մեղեդիների ժող–ների և այլ գործերի: Ուսումնասիրությունները վերաբերում են հունգար. երաժշտ. բանահյուսությանը:

ԿՈԴԱՅԿԱՆԱԼԻ ԱՍՏՂԱՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ, Հնդկաստանի ազգ. աստղադիտարան Թամիլանդ նահանգում՝ Կոդայկանալում: Հիմնադրվել է 1899–ին՝ 2343 *մ* բարձր–յան վրա: Աստղադիտարանում հետազոտում են աստղերը, Արեգակը, Արեգակ–Երկիր կապերը, կատարում երկրամագնիս. և իոնոլորտ. դիտարկումներ:

ԿՈԴԱՎՈՐՈՒՄ, տեղեկության տարրերի և ***կոդի*** բառերի միջև համապատասխանություն ստեղծելու գործողություն: Կ–ման տեսությունը ստեղծել է ամերիկացի գիտնական Կ. ***Շենոնը***: Տես նաև ***Տեղեկագիտություն***:

ԿՈԴԱՔ, լ–շղթա Անդրբայկալի կենտր. մասում՝ Ստանովյան լ–ների համակարգում: Երկ.՝ շուրջ 200 *կմ*, բարձր.՝ մինչև 2999 *մ*: Կան սառցադաշտեր: Տարածված են հաճարենու և կեչու անտառները, ավելի բարձր ալպ. մարգագետիններն են ուլեռն. տունդրան:

ԿՈԴԵԻՆ, ալկալոիդ. պարունակվում է ափիոնային կակաչի մեջ, մորֆինի ածանցյալ է: Օգտագործում են որպես ցավազրկող միջոց և հազի դեմ: Երկարատև օգտագործումը կարող է հանգեցնել ***թմրամոլության***:

ԿՈԴԵՔՍ (լատ.՝ codex), 1. իրավունքի որևէ բնագավառի վերաբերող օրենքների համակարգված ժող., օրենսգիրք: 2. Հին Հռոմում՝ իրար ամրակցված տախտակների կամ պապիրուսի թերթերի տրցակ՝ գրքի տեսքով: Ժամանակակից գրքի նախատիպն է, պահպանել է Կ–ի ձևը՝ գրքի բլոկի տեսքով: 3. Սովորությունների, համոզմունքների, վարվելու և այլ կանոնների ամբողջությունը: 4. Որևէ գիտ–յան՝ գիտակարգի հիմն. սկզբունքները ձևակերպող աշխ–յուն:

ԿՈԴԶՈԿՈՎ Լուկման Մահմետովիչ (Դմիտրի Ստեպանովիչ, 1818–1893), կաբարդին հաս. գործիչ, հրապարակախոս: Հանդես է եկել հանուն Կովկասի և ռուս ժողղ–ների միջև կապերի ամրապնդման:

ԿՈԴԻՖԻԿԱՑԻՈՒՄ (լատ.՝codificatio, < codex– օրենքների ժող. և facio – ստեղծել), նորմատիվ. ակտերի, այդ թվում՝ օրենքների համակարգման միջոց: Կ–ով ստեղծվում է հաս. որոշակի հարաբերությունների կարգավորման միասն. համակարգ, որտեղ ընդգրկվում են բոլոր գործող, դուրս մնում՝ գործածությունից հանված իրավանորմերը, իսկ օրենսդրության մեջ առաջացած բացը լրացվում է նոր իրավանորմերով: Կ–ի հայտնի օրինակներ են ***Հուստինիանոսի օրենսգիրքը,*** Ֆրանսիայի քաղաքաց. օրենսգիրքը, ***Ռուսկայա պրավդան*** ևն:

ԿՈԴՈՆ, **տրիպլետ**, ***գենետիկական կոդի*** միավոր. կազմված է 3 հաջորդ. նուկլեոտիդներից՝ ԴՆԹ–ի կամ ՌՆԹ–ի մոլ–ում: ***Գենում*** Կ–ի հաջորդականությունը որոշում է տվյալ գենով կոդավորված ամինաթթուների հաջորդականությունը սպիտակուցի պոլիպեպտիդային շղթայում:

ԿՈԴՈՐ, գետ Աբխազիայում: Երկ.՝ 80 *կմ*, ավազանը՝ 2030 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 123 *մ*^{3}/*վ*: Կազմվում է Սակենի և Գվանդրա գետերի միախառնումից: Հոսում է նեղ կիրճով, Սև ծովը թափվելիս առաջացնում է դելտա: Լաստառաքելի է:

ԿՈԴՈՐԻ ԼԵՌՆԱՆՑՔ, Մեծ Կովկասի Գլխ. կամ Ջրբաժան լ–շղթայում: Կապում է Անդյան Կոյսու գետի վերին հոսանքի հովիտը (Դաղստան, ՌԴ) Ալազանի հովտին (Վրաստան): Բարձր.՝ 2365 *մ*:

ԿՈԵԼՅՈ, Կոելյու (Coelho), Պաուլո (Պաուլու, ծ. 1947), բրազիլացի գրող: Շարունակել է Խ. Լ. Բորխեսի և «մոգական ռեալիզմի» մոտիվները: Հեղինակ է «Ալքիմիկոսը» (1988, հայ.՝ 2004), «Հինգերորդ սարը» (1996), «Վերոնիկան որոշել է մեռնել» (1998, հայ.՝ 2016, կինոնկարը՝ 2005), «Տասնմեկ րոպե» (2003, հայ.՝ 2007), «Հաղթողը մնում է մենակ» (2008) և այլ վեպերի, նաև վիպակների, կարճ պատմվածքների ժող–ների:

ԿՈԵՐՑԻՏԻՎ ՈՒԺ (լատ.՝ coercito – պահել), մագնիս. դաշտի լարվածության շեմային արժեքը, որն անհրաժեշտ է ֆեռո– կամ ֆեռիմագնիս. նյութերն ամբողջապես ապամագնիսացնելու համար: Կ. ու–ի մեծությունը պայմանավորված է նյութի ջերմաստիճանի և ներքին կառուցվածքի փոփոխություններով:

«ԿՈԶԱ ՆՈՍՏՐԱ» (իտալ.՝ “Cosa nostra”– «Մեր գործը»), մաֆիայի կազմ–յան անվանում ԱՄՆ–ում: Ստեղծել են իտալացի տարագիրները:

ԿՈԶԱԿ Սեմյոն Անտոնովիչ (1902–1953), ռուս օդաչու, գեն–լեյտ. (1945): ԽՄ հերոս (1943, 1945): ՀՄՊ–ի ժամանակ՝ գվարդ. դիվիզիայի և հրաձգ. կորպուսի հրամ.:

ԿՈԶԵՐ (Coser) Լյուիս Ալֆրեդ (1913–2003), գերմանացի սոցիոլոգ: 1933–ից՝ վտարանդի (Ֆրանսիա, ԱՄՆ): Գ. Զիմելի և Ռ. Մերտոնի գաղափարների շրջանակներում Կ. մշակել է սոցիոլոգ. հակադրության տեսություն («Սոցիոլոգիական տեսություն», 1964, «Քաղաքական սոցիոլոգիա», 1967, ևն):

ԿՈԶԻԿՅԱՆ Գարեգին, **Եսայեմ** (1878–1915), հաս–քաղ. գործիչ: 1898–ին մի խումբ համախոհների հետ հիմնադրել է Հայ բանվորների սոցիալ–դեմոկրատ. խումբը, 1900–01–ին՝ «Բանւոր» թերթի խմբագիրներից: 1903–ին արտաքսվել է Ռուսաստանից, հաստատվել Ժնևում: 1909–ին՝ Կ. Պոլսի «Նոր հոսանք», 1910–14–ին՝ «Ապագայ» պարբ–ների խմբ.: Դատապարտել է երիտթուրքերի պանթուրք. քաղ–յունը: Հեղինակ է «Թող ֆակտերը խօսեն» (1904) գրքույկի: Մեծ եղեռնի զոհ:

ԿՈԶԻԿՅԱՆ (Գոզիկյան) Վարուժան Ավետիսի (ծ. 1936), ռումիանահայ ջութակահար: 1959–ից՝ Բուխարեստի ֆիլհարմոնիկ նվագախմբի ջութակահար, 1960–ից՝ կոնցերտմայստեր: Բուխարեստի կոնսերվատորիայի պրոֆ.: Համերգներով հանդես է եկել նաև Երևանում (1968): Միջազգ. մրցույթների (Պ. Ի. Չայկովսկու անվ., Ջ. Էնեսկուի անվ., Ժնև, 1957–58, ևն) փառատոների դափնեկիր:

ԿՈԶԻՆՑԵՎ Գրիգորի Միխայլովիչ (1905–1973), ռուս կինոռեժ., մանկավարժ, սցենարիստ, կինոյի տեսաբան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1964): Լ. Ջ. ***Տրաուբերգի*** հետ մշակել է կինոարտահայտչության սուր գրոտեսկ. հնարքներ: Նկարահանել է «Շինել» (1926), «Դոն Կիխոտ» (1957), «Մաքսիմի պատանեկությունը» (1935), «Մաքսիմի վերադարձը» (1937), «Վիբորգյան կողմ» (1939) եռերգությունները (Տրաուբերգի հետ), «Համլետ» (1964), «Լիր արքա» (1971) և այլ ֆիլմեր: Հեղինակ է «Ողբերգությունների տիրույթը» (1973) և այլ գրքերի: ԽՍՀՄ Պետ. (1941, 1948), Լենինյան (1965) մրց–ներ:

ԿՈԶԻՆՑԵՎԱ (Ռիխտեր–Տեր–Մինասյան) Նատալյա Անդրեևնա (1945–2001), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ–ր: Երվանդ ***Տեր–Մինասյանի*** թոռնուհին: Հեղինակ է «Ռուսերենի բայական կերպային ձևերի

համադրումը», «Պասսիվ և անորոշ-անձնական կառույցները ժամանակակից հայերենում» և այլ աշխ-ների, նաև մենագրությունների, հոդվածների:

ԿՈՋԼՈՎ Դմիտրի Իլիչ (1919–2009), ռուս կոնստրուկտոր: ՌԳԱ թղթ. անդամ (1991, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1984-ից): Սոց. աշխ. կրկնակի հերոս (1961, 1979): Աշխարհում 1-ին միջմայրցամաք. բալիստիկ հրթիռի (Р-7) առաջատար կոնստրուկտորը: Աշխ-ները վերաբերում են ՏՏ համակարգերի ստեղծման հարցերին:

Լենինյան (1957), ԽՍՀՄ (1976, 1983), ՌԴ (1994) Պետ. մրց-ներ:

ԿՈՋԼՈՎ Իվան Իվանովիչ (1779–1840), ռուս բանաստեղծ, թարգմանիչ: 1821-ին կուրացել է: Հեղինակ է քնար. բանաստեղծությունների, «Վանական» (1825) ազգ. կոլորիտով հարուստ ռոմանտիկ. պոեմի: Թարգմանել է Թ. Մուրի «Երեկոյան ղողանջ» (1828) բանաստեղծությունը, որը դարձել է ժող. երգ:

ԿՈՋԼՈՎ Լեոն Նիկոլաևիչ (1927–1998), ռուս քիմիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1991, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1987-ից): Սոց. աշխ. հերոս (1985): Աշխ-ները վերաբերում են նոր տեխնիկայի հատուկ նյութերի քիմիային և տեխնոլոգիային: Լենինյան (1982), ԽՍՀՄ (1977) Պետ. մրց-ներ:

ԿՈՋԼՈՎ Պյոտր Կուզմիչ (1863–1935), ռուս հետազոտող-գիտնական: Ուկր. ԳԱ ակադ. (1928): 1899–1901 և 1923–26-ին ղեկավարել է մոնղոլա-տիբեթ. (Հուանհե, Ցանցզի, Մեկոնգ գետերի վերին հոսանքներում), 1907–09-ին՝ մոնղոլա-սիչուան. արշավախումբը. Գոբի անապատում հայտնաբերել է Ղարա-Խոտո (սև քաղաք) ք-ի մնացորդներ, տանգուտյան մշակույթի առարկաներ: Կ-ի անունով է կոչվում ***Տարին Բողդո Օլա*** լ-շղթայի սառցադաշտը:

ԿՈՋԼՈՎ Վլադիմիր Պետրովիչ (ծ. 1949), ռուս պատմաբան: ՌԳԱ թղթ. անդամ (1997): Հեղինակ է «Ռուսաստանի հին աճյունասափորներ» (1981), «Կեղծարարության գաղտնիքներ» (1994), «Տեսական և կիրառական հնագրագիտության հիմունքներ» (2-րդ հրտ.՝ 2008) և այլ աշխ-ների: ՌԴ Պետ. մրց. (2002):

ԿՈՋԼՈՎՄԿԻ Ալեքսեյ Ֆեոդորովիչ (1905–1977), ռուս. կոմպոզիտոր, դիրիժոր: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1944): Ուզբ. ԽՍՀ ժող. արտիստ (1955): 1938–41-ին՝ Ուզբեկստանի ՕԲԹ-ի դիրիժոր, 1949–63-ին՝ Տաշքենդի սիմֆ. նվագախմբի գլխ. դիրիժոր և գեղ. ղեկ.: Հեղինակ է «Ուլուգբեկ» (1942) օպերայի, «Իվոլգա» (1969) բալետի, նվագախմբ., դաշնամուր., վոկալ-սիմֆ. և այլ գործերի, ռոմանսների, երգերի: Ուզբ. ԽՍՀ Պետ. մրց. (1973):

ԿՈՋԼՈՎՄԿԻ Իվան Սեմյոնովիչ (1900–1993), ուկրաինացի երգիչ (քնարադրամատիկ. տենոր): ԽՍՀՄ (1940), Ուկր. (1993) ժող. արտիստ: Սոց. աշխ. հերոս (1980): 1924-ից՝ Խարկովի, Սվերդլովսկի օպեր., 1926–54-ին՝ Սոսկվայի Մեծ թատրոնների մենակատար (Լենսգրին՝ Ռ. Վագների «Լոհենգրին», Ալֆրեդ՝ Ջ. Վերդիի «Տրավիատա», Յուրոդիվի՝ Մ. Պ. Մուսորգսկու «Բորիս Գոդունով», Օնեգին՝ Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», ևն):

ԽՍՀՄ (1941, 1949), Ուկր. ԽՍՀ Տ. Գ. Շևչենկոյի անվ. (1990) Պետ. մրց-ներ:

ԿՈՋԼՈՎՄԿԻ Միխայիլ Իվանովիչ (1753–1802), ռուս քանդ., գծանկարիչ: Ռուս. կլասիցիզմի ներկայացուցիչ: Կ-ի ստեղծագործությունները տոգորված են վեհ մարդասիրությամբ, վառ հուզականությամբ («Այոյծի երախը պատռող Սամսոնը» արձանը, 1800–02, Պետերհոֆ, Ա. Ս. Սուվորովի հուշարձանը, 1799–1801, Ս. Պետերբուրգ):

ԿՈՋԼՈՎՍԿԻ (Kozlovsky) Օսիպ (Իոսիֆ, Յուզեֆ) Անտոնովիչ (1757–1831), լեհ կոմպոզիտոր: Ռուս. ռոմանսի («Ռուսական երգեր») հիմնադիրներից: Հեղինակ է նվագախմբի և երգչախմբի համար հերոսահայրենասիր. պոլոնեզների, ռեքվիեմի (1798), նվագախմբային նախերգանքների ու անտրակտների և այլ գործերի:

ԿՈՋԿՈ Վիկտոր Աֆանասևիչ (ծ. 1940), բելառուս գրող: Հեղինակ է «Նահանջ տարի» (1972), «Բարև և մնաս բարով» (1974) վիպակների, «Մանկատան այգու տարեգրություն» (1986) վեպի: Բել. ԽՍՀ Յ. Կոլասի անվ. Պետ. մրց. (1982):

ԿՈՋՄԱ, XII դ-ի 2-րդ կեսի և XIII դ-ի 1-ին քառորդի գրիչ, մանրանկարիչ: 1166-ին Հռոմկլայում ընդօրինակել է և նկարազարդել առաջին Ավետարանը (Մտնդ., ձեռ. № 7347): Մյուս ձեռագրերն ստեղծել է 1205-ին Խարբերդում (ՎստՄՄ), 1219-ին՝ Խարբերդի Բարջանճ անապատում (Մտնդ., ձեռ. № 7734), 2 ձեռագիր Կ. Պոլսում և ԱՄՆ-ում են (Հ. Քյուրտյանի հավաքածու):

ԿՈՋՄԱ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ, **Կոզմա Մայումեցի**, VIII դ-ի բյուզանդացի գրող: Եղել է Հովհան Դամասկեցու գործակիցը: 743-ից՝ Մայումի (Գազայի մերձակայքում) եպս.: Հեղինակ է բազմաթիվ կանոնների, որոնք ներառվել են Արլ. եկեղեց. ժամերգությունների մեջ:

ԿՈՋՄԱ ՊՐԱՀԱՑԻ (Cosmas Pragensis, մոտ 1045–1125), չեխ առաջին ժամանակագիրը, Պրահայում Սբ Վիտա տաճարի դեկան (1110): Հեղինակ է «Չեխական ժամանակագրության» (լատ.):

ԿՈՋՄԱ ՊՐՈՒՏԿՈՎ, գր. ծածկանուն, որի ներքո «Սովրեմեննիկ», «Իսկրա» (երկուսն էլ՝ ռուս.) և այլ պարբ-ներում 1850–60-ական թթ-ին հանդես են եկել բանաստեղծներ Ա. Կ. ***Տոլստոյը*** և ***Ժեմչուժնիկով*** եղբայրները (Ալեքսանդր և Վլադիմիր Միխայլովիչներ):

ԿՈՋՄԻՆ (Cozmin) Վիկտոր (Բոգդան Սըրմաբրյըկյան, 1877–1903), ռումինահայ գրող: «Վիացա մունչիտորիլոր» (1900), «Ավընտուլ» (1900–01, 1904–05) պարբ-ների հիմնադիր-խմբ-ներից: Հեղինակ է «Մարմարի աղերսը», «Սեր», «Լռություն» և այլ քնար. բանաստեղծությունների, նաև պոեմների, «Դինա», «Թեոդոսիա» նովելների: «Ներբող հայ ժողովրդին», «Հերոս նահատակներ» բանաստեղծություններում անդրադարձել է արդուլիա-միդյան կոտորածներին:

ԿՈՋՄՈՅԱՆ Արմանուշ Կոզմոյի (ծ. 1945), բանասեր, արևելագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1997), պրոֆ. (2010): Կոզմո ***Կոզմոյանի*** դուստրը: Հեղինակ է «Քառյակը պարսկալեզու դասական պոեզիայում X–XII դդ.» (ռուս., 1981), «Հայոց և պարսից միջնադարյան քնարերգության համեմատական պոետիկան (10–16 դդ.)» (1997), «Դուրանը հայոց մեջ» (2003) և այլ աշխ-ների: Պարսկ-ից թարգմանել և հրատարակել է «Մարգարտաշար» (1990), «Օմար Խայամ» (1993), «Ռուդաքի» (1995), «Պարսից պոեզիայի ընտրանի» (2004) բանաստեղծությունների ժող-ները: Հայաստանում ԻԻՀ դեսպանատան և մշակույթի կենտրոնի ոսկե մեդալ (2012):

ԿՈՋՄՈՅԱՆ Կոզմո Սենեքերիմի (1913–1984), պատմաբան: Պատմ. գիտ. թեկնածու (1953): Արմանուշ ***Կոզմոյանի*** հայրը: Հեղինակ է Խորհրդ. Հայաստանի քաղաքներին և մի շարք արդ. խոշոր ձեռնարկներին նվիրված աշխ-ների («Քաղաքների զարգացումը Սովետական Հայաստանում», 1977, ևն):

ԿՈՐԻԿՅԱՆ Արման Անանիայի (1896–1968), դերասան, բանաստեղծ, թարգմանիչ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1967): Փարիզի Հայ ժող. թատրոնի հիմնադիրը (1932): 1936-ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասան (Օգսեն, Մանուկ աղա՝ Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար», «Մեծապատիվ մուրացկաններ», Բեն Ակիբա՝ Կ. Գուցկովի «Ուրիել Ակոստա», ևն): Նկարահանվել է կինոյում («01–99», 1959, «Նվագախմբի տղաները», 1960, «Տժվժիկ», 1961, «Կարինե», 1967, բոլորը՝ Հայֆիլմ): Հեղինակ է բեմավորումների, կատարել է թարգմ-յուններ (Է. Ռոստանի «Սիրանո դը Բերժըրակ» ևն):

ԿՈՐՈՂ, ուղղաձիգ կանգնեցված քարե քառանիստ, բազմանիստ, կլոր սյուն կամ տախտակ. ունի հիմնականում հիշատակման նշանակություն: Ծագում է բրոնզեդար. ***մենհիրներից***: Ծածկվել են պատկերաքանդակներով և արձանագրություններով: Նոր շրջանի ճարտ-յան մեջ լինում են սյան կամ ***ստելայի*** ձևով:

ԿՈՐՈՂՅԱՆ Անդրանիկ Մարտիրոսի (1904–1982), մեղվաբույծ: Գղտ. գիտ. դ-ր (1954), պրոֆ. (1958): Աշխ-ները վերաբերում են Հայաստանում մեղվաբուծության զարգացման պատմությանը, մեղվաընտանիքների բազմացմանը, նոր պտղուլացիաների խոշորացված հիբրիդների ստեղծմանը: Կ-ին է պատկանում 1 մեղվաընտանիքից ստացած մեղրի (304 *կգ*) և մեղրամոմի (14 *կգ*) ռեկորդը (1940):

ԿՈՒԱՆՈՎ Իվան Կուզմիչ (1897–1938), խորհրդ. ռազմածով. գործիչ, 2-րդ կարգի նավատորմապետ (1935): 1921-ին՝ Սև և Ազովի ծով. ուժերի Ռազմահեղ. խորհրդի անդամ: 1922–24-ին՝ Խաղաղօվկիանոս. ծով., 1931-ից՝ Սևծով. ուժերի պետ, 1935–37-ին՝ Սևծով. նավատորմի հրամ.: Անհիմն բռնադատվել է, գնդակահարվել, հետմահու՝ արդարացվել:

ԿՈՒԺԵԴՈՒԲ Իվան Նիկիտովիչ (1920–1991), ուկրաինացի օդաչու, խորհրդ. բանակի զորապետ: Ավիացիայի մարշալ (1985): ԽՄ հերոս (1944-ին՝ կրկնակի, 1945): ՀՄՊ-ի ժամանակ՝ կործանիչ ավիացիայի, էսկադրիլիայի հրամ., գնդի հրամ-ի տեղակալ: 120 օդ. մարտերում խփել է 62 ինքնաթիռ:

ԿՈՒԺԵՎՆԻԿՈՎ Ալեքսեյ Յակովլևիչ (1836–1902), ռուս նյարդախտաբան: Նյարդախտաբանության հիմնադիրներից Ռուսաստանում, մոսկովյան գիտ. դպրոցի հիմնադիրը: Աշխ-ները վերաբերում են ԿՆՀ-ի ձևաբանությանը և ֆիզիոլոգիային: Նկարագրել է (1894) կեղևային էպիլեպսիայի հատուկ ձև (կոչվում է Կ-ի անունով): Հեղինակ է «Նյարդային հիվանդություններ և հոգեբուժություն» (1880–81) նյարդախտաբանության ռուս. առաջին դասագրքի:

ԿՈՒԺԵՎՆԻԿՈՎ Վադիմ Միխայլովիչ (1909–1984), ռուս գրող, խմբ.: Սոց. աշխ. հերոս (1974): 1949–84-ին՝ «Զնամյա» (ռուս.) ամսագրի գլխ. խմբ.: Հեղինակ է «Արևածագին ընդառաջ» (1956–57), «Վահան և սուր» (1965, կինոնկար՝ 1968) և այլ վեպերի, «Ծանոթացեք, Բալուև»

(1960, կինոնկար՝ 1963), «Հատուկ ստորաբաժանում» (1969, հայ.՝ 1974), «Պյոտր Ռյաբինկին» (1968) և այլ պատմվածքների ու վիպակների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1971):

ԿՈԺԵՎՆԻԿՈՎ, Վլադիմիր Ալեքսանդրովիչ (1852–1917), մշակույթի ռուս պատմաբան, հրապարակախոս: Ե. Ֆ. *Ֆեոդորովի* երկերի հրտ–ը: Հեղինակ է «Զգացմունքի և հավատի փիլիսոփայություն» (ռուս., 1897, գերմանացի փիլ. Յ. Գ. Համանի մասին), «Բուդդայականությունը քրիստոնեության համեմատությամբ» (հ. 1–2, 1916) և այլ աշխ–ների:

ԿՈԺԻՆՈՎ, Վադիմ Վալերիանովիչ (1930–2001), ռուս գրականագետ, քննադատ, հրապարակախոս, պատմաբան: Հեղինակ է «Արվեստի տեսակները» (1960), «Վեպի ծագումը» (1963) տեսական, «Գրականության տեսություններ» (համահեղ., 1962–65), «Դոստոևսկու «Ոճիր և պատիժ»–ը» (1970), «Նիկոլայ Ռուբցով» (1976), «Տյուտչև» (1988) բանասիր., «XX դ. պատմության առեղծվածային էջերը. «Սևահարյուրականները» և հեղափոխությունը» (1995), «Ռուսաստանի ճակատագիրը: Երեկ, այսօր, վաղը» (1997), «Ռուսաստան. XX դար: Դարասկզբից մինչև «առեղծվածային» 1937» (1999) և այլ պատմագիտ. աշխ–ների, նաև հրապարակախոս. երկերի:

ԿՈԻՄԲՐԱ (Coimbra), ք. Պորտուգալիայում՝ Մոնդեկու գետի ափին, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 143,4 հզ. (2011): XII–XIII դդ–ում եղել է թագավորանիստ: Նշանավոր են հին (XII դ–ի վերջ) և նոր (XVI դ.) տաճարները, Սանտա Կրուշ հուշարձանը (XII դ., վերակառուցվել է XVI դ–ում):

ԿՈԼ (Kohl) Հելմուտ (1930–2017), ԳԴՀ դաշն. կանցլեր՝ 1982–98–ին, ՔԴՄ նախագահ՝ 1973–98–ին: Մեծ դեր է խաղացել Գերմանիայի միավորման և ԵՄ ձևավորման գործում: 2002–ին վայր է դրել պատգամավոր. լիազորությունները և հեռացել ակտիվ քաղ–յունից:

ԿՈԼ, ստերկուլիազգիների ընտանիքի մշտադալար ծառերի ցեղ: Հայտնի է մոտ 125 տեսակ՝ արևադարձ. Աֆրիկայում: Որոշ տեսակներ մշակվում են արևադարձներում, հիմնականում՝ Արմ. Աֆրիկայում: Սերմերը (այսպես կոչված Կ–ի ընկույզները) պարունակում են կոֆեին և թեոբրոմին. օգտագործում են բժշկության մեջ և տոնուսավորող ըմպելիքներ (օր.՝ կոկա–կոլա) պատրաստելու համար:

ԿՈԼԱԳԵՆ (< հուն. kolla – սոսինձ և ...*գեն*), թելքավոր սպիտակուց. կազմում է շարակցական հյուսվածքի (ջիլ, ոսկր, աճառ) հիմքը և ապահովում նրա ամրությունը:

ԿՈԼԱԳԵՆԱՅԻՆ ԹԵԼԵՐ, մարդու և կենդանիների շարակց. հյուսվածքի արտաբջջ. թելեր, որոնք հիմնականում կազմված են *կոլագենից*, որն առաջանում է ֆիբրոբլաստներում: Դժվար են խզվում և սակավ առաձգական են, կատարում են մեխ. ֆունկցիա:

ԿՈԼԱԳԵՆԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, **կոլագենոզներ**, հիվանդությունների պայմանականորեն առանձնացված խումբ, որոնք բնորոշվում են շարակցական հյուսվածքի, այդ թվում՝ *կոլագենային թելերի* համակարգային հարաճուն ախտահարմամբ: Կ. հ. են համակարգային կարմիր գայլախտը, կարծրամաշկությունը, դերմատոմիոզիտը, հանգուցավոր պերիարտերիտը, ռևմատիզմը և ռևմատոիդ հոդաբորբը ևն:

ԿՈԼԱԺ (ֆրանս.՝ collage – բառացի՝ սոսնձել), 1. տեխ. հնարք կերպարվում (1910–ական թթ–ից), հիմնաշերտի վրա տարբեր գույներ և ֆակտուրաներ ունեցող նյութեր սոսնձելը: 2. XX դ–ից երաժշտության մեջ՝ տարբեր ոճերի ստեղծագործություններից առանձին հատվածների ներմուծումն այլ կոմպոզիտորի ստեղծագործության մեջ (օր.՝ Յ. Հայդնի դաշնամուրի սոնատների թեմաների ներմուծումը Դ. Դ. Շոստակովիչի դաշնամուրի 1–ին կոնցեռտի ֆինալում):

ԿՈԼԱԿՈՎՍԿԻ (Kollakowski) Լեշեկ (1927–2009), լեհ փիլ. և հրապարակախոս: 1969–ից՝ վտարանդի (Մեծ Բրիտանիա, ԱՄՆ): Աշխ–ները վերաբերում են փիլ–յան պատմությանը, գեղագիտ–յանը, կրոնի և մշակույթի փիլ–յանը, այդ թվում՝ մարքսիզմի քննադատ. վերլուծությանը:

ԿՈԼԱՅԴԵՐ (անգլ.՝ collaider, < collide – բախվել), լիցքավորված մասնիկների արագացուցիչ՝ հանդիպակաց փնջերով: Դրանց փոխազդեցության հետևանքով հաջողվում է հետազոտվող ռեակցիայում օգտագործել մասնիկների ամբողջ կինետիկ էներգիան:

ԿՈԼԱՅԻ ԹԵՐԱԿՂԶԻ, Ռուսաստանի եվրոպ. մասի ծայր հս–արմ–ում: Մեծ մասում Մուրմանսկի մարզն է: Ողողվում է Բարենցի և Սպիտակ ծովերի ջրերով: Տարածքը՝ շուրջ 100 *կմ*²: Արմ–ում են Խիբինի և Լովոզերյան տունդրայի լ–զանգվածները (բարձր.՝ մինչև 1120 *մ*), կենտր. մասում՝ Կեյվի ջրբաժան բլրաշարը (մինչև 397 *մ*): Կան ապատիտի, նիկելի, երկաթի, փայլարի, տիտանմագնետիտ. հանքավայրեր, հազվագյուտ և գունավոր մետաղների երևակումներ: Գլխ. ք–նվինգստոր *Մուրմանսկն* է:

ԿՈԼԱՅԻ ԾՈՎ, Բարենցի ծովում՝ Կոլայի թ–կղզու հս. ափերի մոտ: Երկ.՝ շուրջ 57 *կմ*, լայն.՝ 1–7 *կմ*, խոր.՝ 200–300 *մ*: Կ. ծ–ում է չսառչող *Մուրմանսկ* նվինգստ–ը:

ԿՈԼԱՊՍ (լատ.՝ collapsus – անկում), կյանքին վտանգ սպառնացող վիճակ. բնորոշվում է արյան ճնշման անկումով և կենս. կարևոր օրգանների արյունամատակարարման դժվարացմամբ: Մարդկանց մոտ դրսևորվում է կտրուկ թուլությամբ, դիմագծերի սրմամբ, գունատությամբ, վերջույթների սառնությամբ: Առաջանում է վարակիչ հիվանդությունների, թունավորումների, արյան մեծ կորստի և այլ դեպքերում:

ԿՈԼԱՍ Յակուբ (Միցկևիչ Կոնստանտին Միխայլովիչ, 1882–1956), բելառուս գրող: Բելառուս. գրկ–յան հիմնադիրներից: ԲԽՍՀ ժող. բանաստեղծ (1926): ԲԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1944), ԳԱ ակադ. (1928) և փոխնախագահ (1929–56): Հեղինակ է «Անազատության երգեր» (1908), «Տրտմության երգեր» (1910) և այլ բանաստեղծությունների ժող–ների, «Նոր երկիր» (1923), «Երաժիշտ Սիմոնը» (1925), «Չկնորսի տնակը» (1947) և այլ պոեմների, նաև վիպակների, պիեսների, «Քառուղիներում» (1923, 1927, 1954) եռերգության: «Լուսավոր ուղի» (1953) ժող–ում հայ. հրատարակվել են Կ–ի գործերից: Կ–ի մի շարք երկերի հիման վրա նկարահանվել են ֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1949):

ԿՈԼԱՐՈՎԱ (Kolárová) Յարոմիրա (1919–2006), չեխ գրող: Հեղինակ է սոցիալ–հոգեբ. «Իմ տղան և ես» (1974), «Մեր փոքրիկ, գողտրիկ աշխարհը» (1977) ինքնակենսագր., «Ադամանդե կրծքազարդ» (1978), «Ձուր» (1980), «Հույսի հատակը խորն է» (1986) վեպերի, «Տներ կանաչ մարգագետնում» (1967, հայ.՝ 1975) մանկապատանեկան վիպակի, կինոսցենարների:

ԿՈԼԲԵ (Kolbe) Ադոլֆ Վիլհելմ Հերման (1818–1884), գերմանացի քիմիկոս: Աշակել է քացախաթթվի (1845), սալիցիլաթթվի (1860, *Կոլբե–Շմիտի ռեակցիա*) և մրջնաթթվի (1861), ածխաջրածինների էլեկտրաքիմ. սինթեզի (1849, *Կոլբեի ռեակցիա*) եղանակներ:

ԿՈԼԲԵ Գեորգ (1877–1947), գերմանացի քանդ.: Հեղինակ է պատանիների և աղջիկների ներդաշնակ, պլաստիկ, պարզ արձանների («Պարուհին», 1911–12), դիմաքանդակների:

ԿՈԼԲԵԻ ՌԵԱԿՑԻԱ, կարբոնաթթուների աղերի լուծույթների էլեկտրոլիզով ածխաջրածինների ստացման եղանակ: Օգտագործվում է պոլիամիդների և հոտավետ նյութերի արտադր–յան մեջ: Աշակել է Ա. *Կոլբեն* (1849):

ԿՈԼԲԵ–ՇՄԻՏԻ ՌԵԱԿՑԻԱ, ֆենոլի ալկալիական աղի վրա CO_2–ի ազդեցությամբ արոմատիկ *օ*–օքսիթթուների սինթեզի եղանակ: Աշակել է Ա. *Կոլբեն* (1860), կատարելագործել գերմանացի քիմիկոս Ռ. Շմիտը (1885):

ԿՈԼԲԵՐ (Colbert) Ժան Բատիստ (1619–1683), ֆրանսիացի տնտեսագետ, Ֆրանսիայի ֆինանսների նախարար՝ 1665–ից: Նրա տնտ. քաղ–յունը (**կոլբերտիզմ**) մերկանտիլիզմի տարատեսակներից է: Կ. ձգտել է խոշոր մանուֆակտուրաների ստեղծման, արդ. ապրանքների արտահանման ավելացման ու ներմուծման կրճատման ուղիով հասնել պետ. եկամուտների աճին:

ԿՈԼԳՈՒԵՎ, կղզի Բարենցի ծովում: Պատկանում է ՌԴ–ին: Տարածքը՝ 5,2 հզ. *կմ*², բն.՝ 436 (2011): Բարձր.՝ մինչև 176 *մ*: Տարածված է տունդրան: Գլխ. բնակավայրը՝ Բուգրինո:

ԿՈԼԴՈՒՆՈՎ, Ալեքսանդր Իվանովիչ (1923–1992), խորհրդ. բանակի զորապետ, ավիացիայի գլխ. մարշալ (1984): ԽՄ հերոս (1944, 1948): ՀՄՊ–ի ժամանակ՝ օդաչու, օղակի հրամ., հրամ–ի տեղակալ, կործանիչ ավիացիոն գնդի էսկադրիլիայի հրամ.: 96 օդ. մարտերում խփել է 46 ինքնաթիռ: 1970–75–ին եղել է ՀՕՊ–ի Մոսկվայի օկրուգի զորքերի հրամ., 1975–ից՝ հրամ–ի 1–ին տեղակալ, 1978–87–ին՝ ԽՍՀՄ ՀՕՊ–ի զորքերի գլխ. հրամ., պաշտպ–յան նախարարի տեղակալ: Լենինյան մրց. (1984):

ԿՈԼԵԳԻԱԼՈՒԹՅՈՒՆ, կառավարման սկզբունք, երբ ղեկավարությունն իրականացվում է մի խումբ լիազորված անձանց (*կոլեգիաների*) միջոցով, որոնցից յուրաքանչյուրն անհատ. պատասխանատվություն է կրում գործունեության որոշակի բնագավառի համար:

ԿՈԼԵԹ (Colette) Սիդոնի–Գաբրիել (1873–1954), ֆրանսիացի կին գրող: Գոնկուրյան ակադ–ի անդամ (1944): Հեղինակ է Կլոդինի մասին ինքնակենսագր. վիպաշարի («Կլոդինը դպրոցում», 1900, «Կլոդինը Փարիզում», 1901, «Կլոդինի տունը», 1922), «Թափառաշրջիկ կինը» (1910), «Շերի» (1920), «Կատու» (1933) և այլ վեպերի, նաև Դիմադրության շարժման մասին «Երեկոյան աստղ» (1946) օրագրության և այլ գործերի:

ԿՈԼԵԺ ԴԸ ՖՐԱՆՍ (Collège de France – Ֆրանսիական քոլեջ), ԳՀ և ուս. հաստատություն: Հիմնադրվել է 1530-ին Փարիզում: Կազմակերպում է հանրամատչելի դասախոսություններ՝ հիմնականում բնական գիտ-յունների նորագույն նվաճումների թեմաներով:

ԿՈԼԵԿՏԻՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, պետությունների համագործակցության ձև՝ հանուն միջազգ. խաղաղության ամրապնդման, խաղաղությանն սպառնացող վտանգի կանխման ու վերացման և, անհրաժեշտության դեպքում, ագրեսիայի ակտի դադարեցման: «Կ. ա.» եզրույթը գործածվել է միջազգ. հարաբերություններում 1922-ից՝ Ազգերի լիգայի շրջանակներում: ԵՀՊ-ից հետո Կ. ա-յան սկզբունքն իրավաբանորեն ամրագրվել և ճանաչվել է ՄԱԿ-ի Կանոնադրությամբ, միջազգ. այլ պայմանագրերով և փաստաթղթերով: Տես նաև *ՀԱՊԿ*:

ԿՈԼԵԿՏԻՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ, փոխազդեցություն ֆիզ. համակարգի մեծաթիվ մասնիկների միջև, որն արտահայտվում է դրանց համաձայնեցված շարժումներով: Կ. փ-յան օրինակներ են պինդ մարմնի ֆոնոնների կամ ֆեռոմագնետիկների սպին. ալիքների միջև փոխազդեցությունը:

ԿՈԼԵԿՏԻՎԱՑՈՒՄ, կոոպերացման միջոցով գյուղաց. մանր տնտ-յունների միավորումը սոց. խոշոր համայն. տնտ-յունների մեջ՝ ԽՍՀՄ-ում (նաև ՀԽՍՀ-ում) 1920-ական թթ-ի վերջ–1930-ական թթ-ի սկզբին: Իրականացվել է արագացված տեմպերով, բռնի մեթոդներով, որը հանգեցրել է արտադր. ուժերի քայքայման, զանգված. սով է սկսվել Պովոլժիեում, Ուկրաինայում (Գոլոդոմոր), Հս. Կովկասում և այլուր:

ԿՈԼԵՆՔԻՄ (< հուն. kolla – սոսինձ և enchyma – բառացի՝ լիքը, այստեղ՝ հյուսվածք), մեխ. հյուսվածք (հիմնականում՝ երկշաքիլ բույսերի երիտասարդ աճող ցողունի առաջն. կեղևի), որը մեծացնում է նրանց ամրությունն ու առաձգականությունը:

ԿՈԼԵՄՆԻԿՈՎ Կոնստանտին Սերգեևիչ (1919–2016), ռուս մեխանիկոս: ՌԳԱ ակադ. (1991, ԽՍՀՄ ԳԱ ակադ.՝ 1987-ից): Աշխ-ները վերաբերում են մեքենաների դինամիկային և հրթիռ. տեխնիկային:
ԽՍՀՄ Պետ. մրց. (1974):

ԿՈԼԵՄՆԻԿՈՎ Վլադիմիր Գրիգորևիչ (ծ. 1925), էլեկտրոնիկայի և հաշվող. տեխնիկայի բնագավառի ռուս գիտնական: ՌԳԱ թղթ. անդամ (1991, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1984-ից): Սոց. աշխ. հերոս (1975): 1985–91-ին՝ ԽՍՀՄ էլեկտրոն. արդ-յան նախարար: Մշակել է միկրոսխեմաների արտադր-յան մոդուլ. կազմակերպման սկզբունքները: Լենինյան (1966), ԽՍՀՄ Պետ. (1984) մրց-ներ:

ԿՈԼԵՄՆԻԿՈՎ Վլադիմիր Իվանովիչ (ծ. 1941), ռուս մեխանիկոս: ՌԳԱ ակադ. (2003, թղթ. անդամ՝ 1991-ից): 1996–2012-ին՝ Ռոստովի ճանապարհաշինության պետ. համալսարանի ռեկտոր: Աշխ-ները վերաբերում են ճանապարհ., շին., բեռնամբարձ և փոխադր. մեքենաների շփվող օղակների հուսալիությանը:

ԿՈԼԵՍՈՎ Նիկոլայ Ֆիլարետովիչ (1904–2006), ուկրաինացի կոմպոզիտոր, դիրիժոր: Ուկր. ԽՍՀ (1972), ԽՍՀՄ (1991) ժող. արտիստ: Ֆ. Մ. *Կոլեսայի* որդին: Հեղինակ է սիմֆոնիաների, «Լևկովյան հարսանիք» սյուիտի՝ երգչախմբի և լար. քառյակի համար (1937, 2-րդ խմբագրությունը՝ 1967), դաշնամուր., խմբերգ. և այլ գործերի, ժող. երգերի մշակումների, «Դիրիժորական տեխնիկայի հիմունքները» (1960) աշխ-յան:
Ուկր. ԽՍՀ Պետ. մրց. (1983):

ԿՈԼԵՍՍԱ Ֆիլարետ Միխայլովիչ (1871–1947), ուկրաինացի երաժշտագետ: Ուկր. ԽՍՀ ԳԱ ակադ. (1929): Ն. Ֆ. *Կոլեսայի* հայրը: Հավաքել և ուսումնասիրել է ուկր. ժող. երգեր, որով մեծապես նպաստել է ուկր. բանագիտ-յան զարգացմանը:

ԿՈԼԻԲՐԻՆԵՐ, երկարաթևների կարգի թռչունների ընտանիք: Երկ.՝ 5,7–21,6 *սմ*, կ. զ.՝ 1,6–20 *գ*, ամենափոքր թռչուններն են: Փետրավորումը գեղեցիկ է, վառ: Հայտնի է մոտ 330 տեսակ: Ծագել են Ամերիկայից (Հվ. Ալյասկայից և Լաբրադորից մինչև Հրո երկիր), հատկապես տարատեսակ են արևադարձներում: Արդյունագործ. օբյեկտ են (փետուրները): Բոլոր տեսակները գրանցված են ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ԿՈԼԻՋԵՈՒՄ, **կողոսեոն** (լատ.՝ colosseus – վիթխարի), Փլավիոսների ամֆիթատրոնը (190 x 156 *մ*) Հռոմում, հինհռոմ. ճարտ-յան հուշարձան (75–80): Նախատեսվել է ներկայացումների և գլադիատորների մարտերի համար: Տեղավորել է 73 հզ. հանդիսական: Պահպանվել է մի մասը: Ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխ. ժառանգության ցանկում:

ԿՈԼԻԶԻՈՆ, (լատ.՝ collisio – բախում), 1. հակադիր շահերի, ձգտումների, հայացքների բախում, ընդհարում: 2. (Գրկ.) կենս. (կյանքի) հակասությունների և պայքարի պատկերումը գեղ. գրկ-յան մեջ: 3. (Երկրբ.) քարոլորտի՝ օվկիանոս. ավազանները եզերող մայրցամաք. բլոկների բախումը: Ուղեկցվում է բախվող բլոկների ձևախախտումով, ապարների տարածաշրջ. փոխակերպումով, մագմայականությամբ, լեռնակազմությամբ (կոլիզիոն օրոգենի ձևավորում) և մայրցամաք. կեղևի հաստացմամբ: Բախման հետքերը պահպանվում են Երկրի մակերևույթի վրա կոլիզիոն կարերի տեսքով: Առավել ակնհայտ է Ալպ–Հիմալայան գեոսինկլինալային գոտում:

ԿՈԼԻՄԱ, (յակուտ.՝ Խալիմա), գետ Յակուտիայում և ՌԴ Մագադանի մարզում: Երկ.՝ 2600 *կմ* (Կենելիջի գետի ակունքից), որի 1400 *կմ*՝ Մագադանի մարզի, մնացածը՝ Յակուտիայի տարածքում: Ավազանը՝ 643 հզ. *կմ*^{2}, ջրի ծախսը՝ 3800 *մ*^{3}/*վ*: Կ-ի ափերին է Սրեդնեկոլիմսկ ք-ը:

ԿՈԼԻՄԱ, (Colima), նահց Մեքսիկայում: Տարածքը՝ 5,2 հզ. *կմ*^{2}, բն.՝ 650 հզ. (2011): Վարչ. կենտրոնը՝ Կոլիմա: Բն.՝ 137,3 հզ. (2010):

ԿՈԼԻՆՅԻ (Coligny) Գասպար դը Շատիյոն (de Chatillon, 1519–1572), ֆրանսիացի ծովակալ՝ 1552-ից: 1569-ից՝ հուգենոտների ղեկ.: Սպանվել է Բարդուղիմեոսյան գիշերը:

ԿՈԼԻ-ՎԱՐԱԿ աղիների, առավելապես՝ վաղ մանկ. տարիքի երեխաների սուր վարակիչ հիվանդություն. հարուցիչը հիվանդածին աղիք. ցուպիկն է: Ընթանում է բարակ աղիների, բարակ ու հաստ աղիների զուգակցված բորբոքումներով: Հարուցիչը փոխանցվում է ինչպես *դիզենտերիայի* ժամանակ:

ԿՈԼԻՍ, տես *Հաստ աղիի բորբոքում*:

ԿՈԼԻ-ՏԻՏՐ (հուն.՝ kolon – հաստ աղի), հետազոտվող նյութի (ջուր, հող ևն) այն նվազագույն քանակը, որտեղ պարունակվում է 1 աղիք. ցուպիկ: Կղանքի աղտոտման ցուցիչ է:

ԿՈԼԻ-ՑՈՒՑԻՉ, աղիք. ցուպիկի (կոլիբակտերիա) թիվը հետազոտվող նյութի (ջուր) 1 *լ*-ում (պինդ նյութի՝ հող, 1 *կգ*-ում): Կղանքի աղտոտման ցուցիչ է:

ԿՈԼԼԱՏԵՐԱԼՆԵՐ (< լատ. con – հետ, միասին և lateralis – կողմնային), մարդու և ողնաշարավոր կենդանիների արյան անոթների շրջանցիկ ճյուղեր, որոնք ապահովում են արյան առհոսքը և հետհոսքը՝ շրջանցելով հիմն. անոթը:

ԿՈԼԼԻ (անգլ.՝ collie), շոտլանդ. հովվաշուն, ծառայող. շների ցեղ, բուծել են Շոտլանդիայում: Շիկավուն է կամ սև, կուրծքը, վիզը և ոտքերը՝ սպիտակ: Լինում են երկարամազ և կարճամազ Կ-ներ: Տարածված են մի շարք երկրներում:

ԿՈԼԼՈ (Collot) Մարի Անն (1748–1821), ֆրանսիացի քանդակագործուհի: Աշակերտել է Է. Մ. *Ֆալկոնեին*: 1766–78-ին աշխատել է Ռուսաստանում: Ստեղծել է Պետրոս I-ի գլխի մոդելը՝ Ս. Պետերբուրգում տեղադրված («Պղնձե հեծյալը») ձիարձանի համար, դիմաքանդակներ, կիսանդրիներ (Է. Մ. Ֆալկոնե, 1773):

ԿՈԼԼՈԴԻ (Collodi, Լորենցինի, Lorenzini) Կառլո (1826–1890), իտալացի գրող, քննադատ: Հեղինակ է «Փինոքքիոյի արկածները...» (1881–83, հայ.՝ 1925) մանկ. վիպակի (մոտիվներով Ա. Ն. Տոլստոյը գրել է «Ոսկե բանալի» հեքիաթ-վիպակը), նաև պատմվածքների, հրապարակախոս. ակնարկների:

ԿՈԼԽԵՐ, հինվրաց. երկրագործ ցեղերի (Այսրկովկասի հվ-արմ-ում) ընդհ. անվանումը մ. թ. ա. I հզ-ամյակում: Մ. թ. ա. մոտ VIII դ-ում ստեղծել են ցեղ. միություն, VI դ-ում՝ *Կոլխիդայի թագավորությունը*:

ԿՈԼԽԻԴ, տարածքի պատմ. անվանումն Արմ. Վրաստանում: Բնակեցրել են *կոլխերը*: Մ. թ. ա. VI դ-ում առաջացել են հուն. Փասիս (այժմ՝ Փոթի) և Դիոսկուրիա (այժմ՝ Սուխում) գաղութները: Կ-ի հետ է կապվում *արգոնավորդների* առասպելը: Մ. թ. ա. VI–II դդ-ում գոյություն է ունեցել *Կոլխիդայի թագավորությունը*:

ԿՈԼԽԻԴԱՅԻ ԴԱՇՏԱՎԱՅՐ, Վրաստանում՝ Սև ծովի, Մեծ Կովկասի և Փոքր Կովկասի միջև: Ծովափով ձգվում է Սուխումից մինչև Քոբուլեթ: Անվանումն ստացել է այս վայրերում բնակված *կոլխերի* անունից: Հայտնի է նաև «Ոսկեհոն դաշտավայր» անվանումով: Զբաղվում են հացահատիկի (գլխավորապես՝ եգիպտացորենի), մերձարևադարձ. բույսերի մշակությամբ և պտղաբուծությամբ:

ԿՈԼԽԻԴԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, *կոլխերի* պետությունը մ. թ. ա. VI–II դդ-ում, Այսրկովկասի հվ-արմ-ում: Մ. թ. ա. IV դ-ում փորձել է միավորել վրաց. բոլոր ցեղերը: Մ. թ. ա. II դ-ում նվաճել է Պոնտ. թագավորությունը, այնուհետև՝ Հռոմը:

ԿՈԼԽԻԴՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ (հնէ-բան.), տարածվել է Արմ. Վրաստանի, Աբխազիայի, Հս-արլ. Թուրքիայի տարածքներում, Սոչիի շրջանում: Կոբանկոլխիդյան հանրության մաս է, որտեղ առանձնացվում են բզիբյան, ինգուրիոնյան, լեչխումո-իմերեթյան Կ. մ-ները: Զևավորումը բազմակենտրոն է, հիմքում օչամչիրյան, դոլմենյան և այլ մշակույթներն են: Զևավորվել է մ. թ. ա. X–IX դդ-ում, ծաղկել VIII դ-ի կեսեր–VII դ-ի կեսերին: Անցում. շրջանից (VII դ-ի 2-րդ կես–VI դ-ի 1-ին կես) հետո ձևավորվել են հին Կ. մ-ներ՝ բզիբյան (մ. թ. ա. III դ-ի սկիզբ) և *Կոլխիդայի թագավորություն*,

որը գոյատևել է մինչև ***հելլենիզմի*** դարաշրջանի վերջը:

ԿՈԼԽԻՅԻՆ, ալկալոիդ, պարունակվում է շնդեղ բույսում: Նյարդալուծանք. ազդեցության թույն է: Օժտված է մետաֆազում բուս. և կենդ. բջիջների կիսումը կանխող հատկությամբ: Օգտագործվում է գենետիկ. ընտրասերման աշխ-ներում՝ պոլիպլոիդ ձևեր ստանալու համար: Տես նաև ***Պոլիպլոիդիա***:

ԿՈԼՄԱՆՈՎՍԿԻ Էդուարդ Սավելևիչ (1923–1994), հրեա կոմպոզիտոր: ՌԽՖՍՀ (1981), ԽՍՀՄ (1991) ժող. արտիստ: Հեղինակ է «Սպիտակաձյունիկը» (1965) օպերայի, երաժշտ. կոմեդիաների, թատեր. երաժշտության, երգերի («Ես սիրում եմ քեզ, կյանք», 1958, «Ուզում են արդյոք ռուսները պատերազմ» 1961, «Այոշա», 1966, «Տղամարդիկ», 1973, ևն), նվագախմբային և էստրադ. երկերի, ռոմանսների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1984):

ԿՈԼՄՈԳՈՐՈՎ Անդրեյ Նիկոլաևիչ (1903–1987), ռուս. մաթեմատիկոս: Հավանականությունների և ֆունկցիաների տեսությունների գիտ. դպրոցի հիմնադիր: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939): Սոց. աշխ. հերոս (1963): Աշխ-ները վերաբերում են մաթ. տրամաբ-յանը, տոպոլոգիային, դիֆերենցիալ հավասարումներին, ֆունկցիոնալ վերլուծությանը և տեղեկագիտ-յանը:

ԽՍՀՄ Պետ. (1941), Լենինյան (1965) և այլ մրց-ներ:

ԿՈԼՄՈԳՈՐՈՎ Վաղիմ Լեոնովիչ (1931–2012), ռուս. մեխանիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1994): Աշխ-ները վերաբերում են նյութերի ջերմապլաստիկ ձևափոխության տեսությանը և մետաղների՝ ճնշումով մշակման մեխանիկային: ԽՍՀՄ ՆԽ մրց. (1983):

ԿՈԼՅՈՒՉԻՆԻ ԾՈՎԱԽՈՐՇ, Չուկոտի ծովի ծոց Չուկոտի թ–կղզու հս. ափերի մոտ: Երկ.՝ 100 *կմ*, լայն. մուտքի մոտ՝ 2,8 *կմ*, ներքին հատվածում՝ շուրջ 37 *կմ*, խոր.՝ 7–14 *մ*: Տարվա մեծ մասը ծածկված է սառույցով:

ԿՈԼՅՈՒՐ (աստղագիտ.), երկնոլորտի մեծ շրջան, որն անցնում է Երկրի բևեռներով և գիշերահավասարների կամ արևադարձների կետերով: **Գիշերահավասարի Կ.** անցնում է գարնան. և աշնան. գիշերահավասարների կետերով, **արևադարձի Կ.**՝ ամառ. և ձմեռ. արևադարձների:

ԿՈԼՈՒԴ ԼՈՒԻՍՈՒՅԹՆԵՐ, հեղուկ դիսպերս միջավայրով զոլեր: Տարբերում են հիդրոզոլեր (ջր. միջավայրով) և օրգանոզոլեր (օրգ. միջավայրով):

ԿՈԼՈՒԴՆԵՐԻ ՔԻՄԻԱ, դիսպերս համակարգերի և մակերևութ. երևույթների մասին գիտ-յան ավանդ. անվանումը: Ուսումնասիրում է ադհեզիան, ադսորբումը, թրջումը, կոագուլացիան, էլեկտրոֆորեզը: Աշակում է շին. նյութերի տեխնոլոգիայի, լեռն. ապարների հորատման, մետաղների մեխ. մշակման ևնի գիտ. հիմունքները: Պոլիմերների կենսաքիմիայի և ֆիզքիմիայի հետ կազմում է Երկրի վրա կյանքի առաջացման ու զարգացման ուսմունքի հիմքը:

ԿՈԼՈԼԱԿ, մեծ քուֆթա, հայկ. կերակուր: Պատրաստում են հիմնականում տավարի թարմ մսից՝ Հայաստանի գրեթե բոլոր գվռ-ներում: Հայտնի են մասնավորապես Գավառի և Էջմիածնի Կ-ները:

«ԿՈԼՈԿՈԼ» («Колокол» – «Զանգ»), ռուս. առաջին հեղ. թերթը (1857–65, Լոնդոն, 1865–67, Ժնև): Խմբ–հրտ-ներ՝ Ա. Ի. Գերցեն, Ն. Ի. Օգարյով: Անդրադարձել է նաև թուրքահայության վիճակին: Միքայել ***Նալբանդյանը*** բարեկամ. կապեր է ունեցել «Կ.»-ի շուրջ հավաքված հեղ. դեմոկրատների հետ:

ԿՈԼՈԿՈՏՐՈՆԻՍ (Kolokotrōnēs) Թեոդորոս (1770–1843), ***Մորեայի*** զորքերի գլխ. հրամ.՝ Հուն. ազգ–ազատագր. հեղափոխության (1821–29) ընթացքում: Ղեկավարել է զորքերը Տրիպոլիսի ազատագրման (1821–ի հոկտ.), թուրք. բանակի ջախջախման (1822–ի ամռ.) ժամանակ: Եղել է Ի. ***Կապոդիստրիասի*** կողմնակիցը: 1835–ից՝ Պետ. խորհրդի անդամ:

ԿՈԼՈՄԱՍՈՎ Վասիլի Մաքսիմովիչ (1909–1987), մորդվին գրող, դրամատուրգ, թարգմանիչ: Հեղինակ է «Յախիմ Լավգինով» (1936) վիպակի, «Լավգինով» (1941–56) վեպի, «Դժբախտը» (1956), «Ձմեռային ճանապարհ» (1984) և այլ պատմվածքների, նաև պիեսների:

ԿՈԼՈՄԲ (Colombe) Միշել (մոտ 1430–1512 և 1515 միջև), ֆրանսիացի քանդ.: Ֆրանս. Վաղ Վերածննդի քանդ-յան հիմնադիրներից: Զարգացրել է իտալ. վերածնության արվ–ի նվաճումները, պահպանել գոթ. ոճի, հատկապես՝ զարդաքանդակ. տարրերը («Սուրբ Գեորգիի կռիվը հրեշի հետ», 1509, հարթաքանդակ):

ԿՈԼՈՄԲՈ (Colombo), ք–նվինգստ Շրի Լանկայում: Բն.՝ 672,7 հզ. (Մեծ Կ.՝ 5,648 մլն, 2011): Երկրի տնտ. և մշակութ. գլխ. կենտրոնն է: Գործում է բուդդ. Վիդյալանկարա համալսարանը: 1948–ից՝ Ցեյլոն պետության, 1972–82–ին Շրի Լանկայի Հանրապետության մայրաքաղաքն էր: 1982–ից մայրաքաղաք. գործառույթը Կ–ից տեղափոխվել է ***Շրի Ջայավարդենապուրա Կոտե*** ք.:

ԿՈԼՈՄՆԱ, ք. ՌԴ Մոսկվայի մարզում, նվինգստ Օկա և Մոսկվա գետերի միախառնման տեղում: Բն.՝ 144 հզ. (2014): Հայտնի է XII դ–ից:

ԿՈԼՈՆ (Colonne) Էդուար (1838–1910), ֆրանսիացի (ծագումով՝ իտալացի) դիրիժոր, ջութակահար: «Ազգային համերգներ» ընկ-յան հիմնադիրներից (1873, 1874–ից՝ «Շատլեի համերգներ», հետագայում՝ «Կ–ի համերգներ»): Տարածել է արդի ֆրանսիացի կոմպոզիտորների գործերը:

ԿՈԼՈՆԳ (դե Կոլոնգ) Իվան Պետրովիչ (1839–1901), ծով. նավագնացության բնագավառի ռուս. գիտնական: Գեն–մայոր (1893): Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1896): Մագնիս. կողմնացույցի շեղման տեսության հիմնադիրներից:

ԿՈԼՈՆԻԱ, **Կողոնիա**, հնագույն ք. Փոքր Հայքում: Ըստ Մովսես Խորենացու մ. թ. ա. II դ–ում Կ–ի մոտ Հայոց թագավոր Վաղարշակը պարտության է մատնել փոքրասիական պետությունների դաշնակից զորքին: 395–ից՝ Բյուզանդիայի կազմում:

ԿՈԼՈՆԻԱ (Kolonia), ք. Միկրոնեզիայի Դաշն. Նահանգներում, Պոնպեի նահանգի վարչ. կենտրոնը (մինչև 1989–ը եղել է Միկրոնեզիայի Դաշն. Նահանգների պետության մայրաքաղաքը): Բն.՝ 6 հզ. (2004): Ունի օդանավակայան: Գործում է Միկրոնեզիայի հաս. քոլեջը:

ԿՈԼՈՆՆԱ (Colonna), հռոմ. տոհմ, որը մեծ դեր է խաղացել Հռոմի քաղ. կյանքում XIV–XVI դդ–ում, մրցել է Օրսինի տոհմի հետ: Կ–ի տոհմից էին ***Մարտին V*** պապը և մի շարք այլ կարդինալներ:

ԿՈԼՈՆՏԱՅ (օրիորդ. ազգանունը՝ Դոմոնտովիչ) Ալեքսանդրա Միխայլովնա (1872–1952), ռուս. հեղ. գործիչ, դիվանագետ, հրապարակախոս: 1917–18–ին՝ պետ. խնամակալության ժողկոմ (1–ին կին նախարարը պատմության մեջ): 1–ին կին դեսպանն աշխարհում: 1930–ից՝ առևտր. ներկայացուցիչ, 1940–45–ին՝ դեսպանորդ, այնուհետև՝ դեսպան Շվեդիայում: Աշխ-ները վերաբերում են կանանց շարժմանը:

ԿՈԼՈՆՏԱՅ (Kollataj) Հուգո (1750–1812), լեհ լուսավորիչ: Կ–ի հետևորդները լեհ. ***յակոբինյաններն*** են: 1791–ի Մայիսի 3–ի սահմանադրության, 1794–ի ***Պոլտանեցի ունիվերսալի*** հեղինակներից է: Լեհ. ապստամբության (1794) շրջանում արմատ. հանրապետականների առաջնորդը: Աշխ-ները վերաբերում են պատմությանը, քաղտնտ-յանը, իրավունքին, մանկավարժությանը:

ԿՈԼՈՊՐՈԿՏՈԼՈԳԻԱ (< հուն. kolon – հաստ աղի, շրջանակաձև աղի և ***պրոկտոլոգիա***), ստամոքսաղիքաբանության բաժին. ուսումնասիրում է հիմնականում հաստ աղու, հետանցքի և հարուղիղաղիք. շրջանի հիվանդությունները:

ԿՈԼՈՍՈՎ Միխայիլ Նիկոլաևիչ (1927–1985), ռուս քիմիկոս–օրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1974): Աշխ-ները վերաբերում են նուրբ օրգ. քիմիային, հակաբիոտիկների և այլ բնական միացությունների քիմիային, նուկլեինաթթուների քիմ. և ֆերմենտ. սինթեզին: Լենինյան մրց. (1984):

ԿՈԼՈՍՈՎ Նիկոլայ Գրիգորևիչ (1897–1979), ռուս հյուսվածաբան: ԽՍՀՄ ԳԱ (1953) և ԲԳԱ (1945) թղթ. անդամ: Աշխ-ները վերաբերում են վեգետատիվ նյարդ. համակարգի ձևաբանությանը և ԿՆՀ–ի հետ նրա փոխհարաբերությանը:

ԿՈԼՈՍՈՎՄԿԻ Նիկոլայ Նիկոլաևիչ (1891–1954), ռուս տնտեսագետ–աշխարհագետ: ԽՍՀՄ ժողտնտ-յան զարգացման 1–ին 5–ամյա պլանի մշակողներից: Աշխ-ները վերաբերում են տնտ. շրջանացմանը: Աշակել է տարածքային–արտադր. համալիրների հայեցակարգ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942):

ԿՈԼՈՏԻՐԿԻՆ Յակով Միխայլովիչ (1910–1995), ռուս ֆիզքիմիկոս: ՌԳԱ ակադ. (1991, ԽՍՀՄ ԳԱ ակադ.՝ 1970–ից): Սոց. աշխ. հերոս (1980): Հետազոտել է կոռոզիայի էլեկտրաքիմ. կինետիկան: Զարգացրել է պասսիվության էլեկտրաքիմ. տեսությունը: Աշակել է մետաղները կոռոզիայից պաշտպանելու անոդային եղանակ:

ԿՈԼՈՐ ԴԵ ՄԵԼՈ (Կոլոր դի Մելու, Collor de Mello) Ֆեռնանդու (ծ. 1949), Բրազիլիայի նախագահ՝ 1990–92–ին: Հրաժարական է տվել խորհրդարանի որոշմամբ: 1986–89–ին՝ Ալագոաս նահանգի նահանգապետ: 1989–ից՝ Ազգ. վերափոխման կուս-յան առաջնորդ:

ԿՈԼՈՐԱԴՈ (Colorado), 1. գետ ԱՄՆ–ում և Մեքսիկայում: Սկիզբ է առնում Ժայռոտ լ–ներից, թափվում է Խաղաղ օվկ–ի Կալիֆոռնիայի ծոցը: Առաջացնում է խորը (մինչև 1800 *մ*) կանիոններ: Երկ.՝ 2334 *կմ*, ավազանը՝ 637 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 637 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է գետաբերանից 228 *կմ*: Կ–ի վրա կառուցվել են Հուվեր (Բոուլդեր Դամ), Գլեն Կանիոն Դամ խոշոր ջրէկները: 2. Նահանգ ԱՄՆ–ում: Տարածքը՝ 270 հզ. *կմ*^{2}, բն.՝ 5,3 մլն (2013): Վարչ. կենտրոնը՝ Դենվեր:

ԿՈԼՈՐԱԴՈՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, հիմնադրվել է 1861–ին ԱՄՆ–ի ***Կոլորադո*** նահանգում: Ներառում է Բոլուդերի համալիրը (համալսարան. քաղաք), Դենվերի կենտրոնը, Դենվերի բժշկ. կենտրոնը,

Կոլորադո–Սփրինգս կենտրոնը: 2015–ին ուներ շուրջ 40 հզ. ուսանող:

ԿՈԼՈՐԱԴՈՅԻ ՍԱՐԱՎԱՆԴ, սարահարթ ԱՄՆ–ի հվ–արմ–ում՝ Կոլորադո, Նյու Մեքսիկո, Արիզոնա և Յուտա նահց–ների տարածքում: Տարածքը՝ շուրջ 375 հզ. *կմ*^{2}, հատվում է Կոլորադո գետի ու նրա վտակների կանիոններով: Բուսածած–կույթը տափաստանային և անապատա–յին է: Կան ուրանի, վանադիումի, բազ–մամետաղների և ոսկու հանքավայրեր: Զարգացած է զբոսաշրջությունը:

ԿՈԼՈՐԻՏ (իտալ.՝ colorito, < լատ. color – գույն, երանգ), **գուներանգ**, գույների համադրման համակարգ կերպարվ–ում: Գեղագիտահուզ. արտահայտչականութ–յան կարևորագույն միջոցներից է:

ԿՈԼՉԱՆՈՎ, Նիկոլայ Ալեքսանդրովիչ (ծ. 1947), մոլ. գենետիկայի, կենսատեղե–կատվության, նանոկենսաճարտարագիտ–յան բնագավառի ռուս գիտնական: ՌԳԱ ակադ. (2008): Աշխ–ները վերաբերում են ծրագրատեղեկատվ. համալիրների ստեղծման ոլորտին՝ կենսատեղեկատվ. և համակարգչ. կենսբ–յան, գենոմ. ԴՆԹ–ի համակարգչ. վերլուծության խնդիրներին:

ԿՈԼՊԱԿՈՎԱ, Իրինա Ալեքսանդրովնա (ծ. 1933), բալետի ռուս արտիստուհի, բալետմայստեր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1965): Սոց. աշխ. հերոս (1983): 1951–ից՝ Լենինգրադի ՕԲԹ–ի մենապարուհի (Կա–տերինա՝ Ս. Ս. Պրոկոֆևի «Քարե ծաղի–կը», Ավրորա՝ Պ. Ի. Չայկովսկու «Քնած գեղեցկուհին», ևն): 1971–ից՝ Լենինգրա–դի ՕԲԹ–ի, 1989–ից՝ «Ամերիկան Բալլե Թիեատր»–ի մանկավարժ–փորձավար:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1980):

ԿՈԼՎԻԼ (Colville), գետ Այլասկայում: Երկ.՝ շուրջ 700 *կմ*, Ավազանը՝ 60 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 380 *մ*^{3}/*վ*: Թափվում է Հս. սառուցյալ օվկ–ի Բոֆորտի ծով:

ԿՈԼՎԻՑ (Kollwitz) Կետե (1867–1945), գեր–մանացի նկարչուհի, գրաֆիկ, քանդ.: Ժող. կյանքին և հեղ. պայքարին նվիրված գրա–ֆիկ. շարքերում («Զուլիսկների ապստամ–բությունը», 1897–98, «Գյուղացիական պա–տերազմը», 1903–08, ևն), քանդակներում («Ծնողները», 1924–32, ևն), պլակատնե–րում առավել տպավորիչ են արտահայտ–ված մարդասիր. գաղափարները:

ԿՈԼՎԻՑԱ ԼԻՃ, ՌԴ Կոլա թ–կղզու հվ–արմ–ում: Մակերեսը՝ 121 *կմ*^{2}, խոր.՝ մինչև 20 *մ*: Արտահոսում է համանուն գետը:

ԿՈԼՏ (Colt) Սեմյուել (1814–1862), ամերի–կացի կոնստրուկտոր և արդյունաբերող: Կատարելագործել է ***revolver***, հիմնա–դրել հրազենի արտադր–յուն (1835):

ԿՈԼՏՆՏԵՍԱԽԹՅՈՒՆ, կոլեկտիվ տնտեսություն, գյուղատնտեսական արտել, խոշոր կիսապետ. գղտ. ձեռն. ԽՍՀՄ–ում: Կ–ում հանրայնացվել են գյու–ղացիների աշխ–ը և արտադր–յան բոլոր հիմն. միջոցները: Գյուղացիների զբաղեց–րած հողը եղել է պետ. սեփականություն և տրվել Կ–յանն անժամկետ օգտագործ–ման: Կ–ներն ստեղծվել են հիմնականում 1929–37–ին՝ ***կոլեկտիվացման*** միջոցով: 1990–ական թթ–ի սկզբներին Կ–ների մեծ մասը վերակազմվել է բաժնետիր. ընկ–ների և կոոպերատիվների: ՀՀ–ում 1991–ի փետր–ին ընդունված «Գյուղացիական և գյուղական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքով 1991–92–ին լուծարվել են Կ–ներն ու պետ. (խորհրդ.) տնտ–յուն–ները, և ձևավորվել են 320 հզ–ից ավելի անհատ. տնտ–յուններ:

ԿՈԼՐԱՈՒՇ (Kohlrausch), գերմանացի ֆի–զիկոսներ՝ հայր և որդի: **Ռուդոլֆ Հեր–ման Առնդտ Կ.** (1809–1858), աշխ–ները վերաբերում են էլ. և մագնիս. չափումնե–րին (Վ. ***Վեբերի*** հետ): **Ֆրիդրիխ Վիլհելմ Գեորգ Կ.** (1840–1910), Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. անդամ (1894): Աշխ–ները վերա–բերում են էլեկտրականությանը, մագնե–տիզմին, էլ. քիմիային, օպտիկային:

ԿՈԼՅՈՎ, Ալեքսեյ Վասիլևիչ (1809–1842), ռուս բանաստեղծ: Հեղինակ է «Մի՛ աղմկիր, տարեկան» (1831), «Մանկալի եր–գը» (1831), «Հնձվորը» (1836) բանաստեղ–ծությունների ժող–ների: Կ–ի «Անտառ» (1837) բանաստեղծությունը նվիրված է Ա. Ս. Պուշկինի հիշատակին: Հայ. հրա–տարակվել է «Հատընտիր» (1959) ժող–ը:

ԿՈԼՅՈՎ, (Ֆրիդլյանդ) Միխայիլ Եֆիմովիչ (1898–1940), ռուս. լրագրող, գրող, հրա–պարակախոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1938): Բ. Ե. ***Եֆիմովի*** եղբայրը: Ֆելիե–տոնի վարպետ («145 տող լիրիկա», 1924, ևն): Հեղինակ է «Իսպանական օրագիր» (1938) վավերագր. գրքի, որտեղ պատկե–րել է Իսպանիայի՝ 1936–39–ի քաղաքաց. պատերազմը, նաև երգիծ. պատմվածքնե–րի, ակնարկների և այլ գործերի: Անհիմն բռնադատվել է, գնդակահարվել:

ԿՈԼՅՈՎ, Նիկոլայ Կոնստանտինովիչ (1872–1940), ռուս կենսաբան, փորձարար. կենսբ–յան հիմնադիրը Ռուսաստանում: Ս. Պետերբուրգի (1916), Ռուսաստանի (1917), ԽՍՀՄ (1923) ԳԱ–ների թղթ. ան–դամ, ՀամԳԳԱ ակադ. (1935): Մոսկվայի փորձարար. կենսբ–յան ինստ–ի կազ–մակերպիչն ու 1–ին տնօրենը (1937–39): Առաջինն է առաջարկել քրոմոսոմի մոլ. կառուցվածքի և մատրիցային վերար–տադր–յան («ժառանգական մոլեկուլներ») հիպոթեզը:

ԿՈԼՅՈՎԱ, Միրա Միխայլովնա (ծ. 1938), բա–լետի ռուս արտիստուհի, բալետմայստեր: ԽՍՀՄ (1989), Ուկրաինայի (2004), Հս. Օսի–այի (2012) ժող. արտիստ: 1957–ից՝ «Բերյոզ–կա» անսամբլի մենապարուհի, 1980–ից՝ գեղ. ղեկ.: Նկարահանվել է կինոյում:

ԿՈԼՈՒՄԲԱ, (Columba, մոտ 521–597), կելտ վանահայր, ուխտավոր, Շոտլանդիայի հս. պիկտերի «առաքյալ», քրիստ. սուրբ: Եղել է Այոն կղզում իր հիմնադրած մենաստա–նի (մոտ 563) վանահայրը, որը դարձել է քրիստոնեության տարածման գլխ. կենտ–րոնը Հս. Անգլիայում և Շոտլանդիայում:

ԿՈԼՈՒՄԲԱՐԻՈՒՄ (լատ.՝ columbarium, սկզբն. նշանակությունը՝ աղավնատուն, < columba – աղավնի), աճյունասափորնե–րի զետեղարան: Հին Հռոմում Կ–ները ներ–սում կիսաշրջանաձև խորշերի շարքերով, ստորգետնյա կամ վերգետնյա, 1–3 հարկ բարձր–յամբ կառույցներ էին: Ներկայում Կ–ները կից են գերեզմանատներին և դիակիզարաններին: 1957–ին Երևանում հայտնաբերվել է մ. թ. ա. I հզ–ամյակի 1–ին քառորդի Կ.:

ԿՈԼՈՒՄԲԻԱ (Columbia), գետ ԱՄՆ–ի և Կանադայի արմ–ում: Երկ.՝ 2250 *կմ*, ավազանը՝ 670 հզ. *կմ*^{2}: Սկիզբ է առնում Ժայռոտ լ–ներից՝ Կոլումբիա լճից, հոսում Ապեր Արռոու և Էռուեր Արռոու լճերով, ապա՝ ***Կոլումբիական սարավանդի*** նեղ ու խոր կիրճերով, կտրում Կասկադյան լ–ներն ու թափվում Խաղաղ օվկ.: Գլխ. վտակը՝ Մնեյկ: Հորդանում է գարնանն ու ամռանը: Կ–ի վրա կառուցված են Զոն Դեյ, Գրանդ Կուլի, Չիֆ Զոզեֆ և այլ ջրէկներ: Նավարկելի է գետաբերանից 450 *կմ*:

ԿՈԼՈՒՄԲԻԱ, (Colombia), **Կոլումբիայի Հանրապետություն**, պետություն Հվ. Ամերիկայում: Սահմանակից է Բրազիլիա–յին, Վենեսուելային, Էկվադորին, Պերուին և Պանամային: Տարածքը՝ 1,14 մլն *կմ*^{2}, բն.՝ 45,7 մլն (2013): Մայրաքաղաքը՝ ***Բոգոտա***: Պետ. լեզուն՝ իսպ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախա–գահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը: Կազմված է 33 (ներառյալ՝ մայրաքաղաքայինը) վարչ. դեպարտա–մենտներից: Բնակչության մեծ մասը կա–թոլիկ է: Անդամակցում է ՄԱԿ–ին, Մեր–կոսուրին, ԱռտՀԿ–ին ևն: Լատ. Ամերիկայի կայուն զարգացող երկրներից է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով մոտ 7,7 հզ. ԱՄՆ դոլար է (2013): Արտահանում է նավթամթերք, սուրճ, քարածուխ, նիկել, բանան ևն, ներ–մուծում մեքենաներ ու սարքավորումներ, քիմիկատներ, սննդամթերք, հագուստ ևն: Դրամ. միավորը՝ կոլումբ. պեսո:

Հնում Կ–ի տարածքը բնակեցված է եղել հնդկացիներով: XV–XVI դդ–ում այն գրավել են իսպ. կոնկիստադորները և վերածել գաղութի՝ «Նոր Գրանադա» անունով: Աֆրիկայից բերվել են ստրուկ–ներ՝ գղտ. աշխ–ների համար: Ամերիկայի անկախության պատերազմի (1810–26) տարիներին Նոր Գրանադան ազատա–գրվել է (1819): 1819–30–ին մտել է Մեծ Կոլումբիայի Դաշնության, 1863–86–ին՝ Կոլումբիայի Միացյալ Նահանգների մեջ: 1886–ից՝ Կոլումբիայի Հանրապե–տություն: Ստրկատիրությունը վերացվել է 1851–ին: XIX դ–ում Կ. դարձել է կռվա–խնձոր Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ–ի միջև: Պանամայի ապագա ջրանցքի նկատմամբ գերիշխանություն ունենալու ակնկալի–քով ԱՄՆ 1903–ին հրահրել է Պանամայի անջատումը Կ–ից, իսկ ներքաղ. կյանքում բորբոքել մրցակցություն Պահպանող. (հիմն.՝ 1848) և Ազատ. (լիբերալ, հիմն.՝ 1849) կուս–յունների միջև, որը 1948–ին վերածվել է զինված բախման. սպանվել է 200 հզ. մարդ: 1957–ին նրանց միջև հաշտություն է կնքվել՝ «պարիտետային կառավարություն» կազմելու վերաբեր–յալ (մինչև 1974–ը երկրի նախագահի պաշտոնն զբաղեցրել են հաջորդաբար): 1991–ին ընդունվել է նոր սահմանադրութ–յուն: 2002–ին ընտրվել է 1–ին նախագահ՝ ազատական Ա. Ուրիբե Վալեսը (2006–ին վերընտրվել է), որին հաջողվել է երկրում կայունացնել իրավիճակը: 2010–ին նախագահ է ընտրվել Խ. Մ. Սանտոս Կալդերոնը, որը մինչ այդ պաշտպ–յան նախարարն էր, 2014–ին վերընտրվել է:

ԿՈԼՈՒՄԲԻԱ, (Columbia), **Կոլումբիա օկրուգ**, դաշն. (մայրաքաղաք.) օկրուգ ԱՄՆ–ում: Տարածքը՝ 0,2 հզ. *կմ*^{2}, բն.՝ 602 հզ. (2012): Մեծ մասն զբաղեցնում է Վա–շինգտոն ք.:

ԿՈԼՈՒՄԲԻԱ, ք. ԱՄՆ–ում, նվինգստո Կոն–գարի գետ ափին, Հվ. Կարոլինա նահց–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 141 հզ. (2013):

ԿՈԼՈՒՄԲԻԱ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ, նահց Կա–նադայի արմ–ում՝ Խաղաղ օվկ–ի ափին: Ընդգրկում է նաև մի շարք կղզիներ՝ Վանկուվեր, Շաղոտա թագուհու ևն: Տա–րածքը՝ 948,7 հզ. *կմ*^{2}, բն.՝ 4,6 մլն (2012): Վարչ. կենտրոնը՝ ***Վիկտորիա***:

ԿՈԼՈՒՄԲԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, հիմ–նադրվել է 1754–ին Նյու Յորքում: Հա–մալսարանի կարգավիճակն ու այժմյան անվանումը՝ 1912–ից: 2016–ին ուներ շուրջ 28 հզ. ուսանող:

ԿՈԼՈՒՄԲԻԱՅԻՆԵՐ, ժողղ, Կոլումբիայի հիմն. բնակչությունը: Ընդհ. թիվը՝ 40 մլն (2010): Ավելի քան 50 %-ը մետիս են, 30 %-ը՝ «սպիտակներ» (հիմնականում՝ քաղաքաբնակներ), 10 %-ը՝ նեգրեր, ևն: Հնդկացիները շուրջ 3,4 % են (արավակներ, կարիբներ, չիբչա, գուախիբո, պաես, կեչուա, սալիվա ևն):

ԿՈԼՈՒՄԲՈՍ (լատ.՝ Columbus, իտալ.՝ Colombo, իսպ.՝ Colon) Քրիստափոր (1451–1506), իսպանացի ծովագնաց: 1492–93-ին ղեկավարել է Հնդկաստան տանող ամենակարճ ճանապարհը փնտրելու դուրս եկած 3 նավից («Սանտա Մարիա», «Պինտա», «Նինյա») բաղկացած իսպ. արշավախումբը: Կտրելով Ատլանտյան օվկիանոսը՝ հոկտ. 12-ին (համարվում է Ամերիկայի հայտնագործման պաշտոն. օրը) հայտնագործել է Բահամյան կղզեխմբի Սան Սալվադոր կղզին: Հաջորդ ճանապարհորդությունների (1493–96, 1498–1500, 1502–04) ժամանակ Կ. հայտնաբերել է Մեծ և Փոքր Անտիլյան կղզեխմբերը, Կենտր. և Հվ. Ամերիկայի՝ Հոնդուրասի, Նիկարագուայի, Կոստա Ռիկայի և Պանամայի Կարիբյան ափերը, հասել մինչև Օրինոկոյի արմ. բազուկի գետաբերանը:

ԿՈԼՈՒՄԲՈՒՄ (Columbus), 1. ք. ԱՄՆ-ում, Օհայո նահ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 787 հզ. (2010): 2. Ք.՝ ԱՄՆ-ի Ջորջիա նահ-ում: Բն.՝ 190 հզ. (2012):

ԿՈԼՈՒՄԵԼԱ (Columella), I դ-ի հռոմեացի գրող, գյուղատնտես: Հեղինակ է «Գյուղատնտեսության մասին» (գիրք 1–12) հանրագիտարանի:

ԿՈԼՖ (Kolff) Վիլլեմ Յոհան (1911–2009), նիդեռլանդացի բժիշկ, արհեստ. ներքին օրգանների առաջին ստեղծողներից: 1943-ին ստեղծել է «արհեստական երիկամ» սարքը: Աշխ-ները վերաբերում են հեմոդիալիզի և որովայնամզ. դիալիզի կատարելագործմանը, երիկամների փոխպատվաստման հարցերին: 1957–ից ղեկավարել է արհեստ. սրտի, ներքին ականջի ֆունկցիա կատարող, «արհեստական երիկամ» դյուրակիր սարքի, կույրերի տեսողության վերականգնման սարքերի ստեղծման աշխ-ները:

ԿՈԽ (Koch) Հայնրիխ Գոտֆրիդ (1703–1775), գերմանացի դերասան, թատեր. գործիչ: Գերմ. թատրոնում ամրապնդել է *զինգշպիլի* տեղը, նպաստել ազգ. մշտ. թատրոնի ձևավորմանը Գերմանիայում: 1771-ին Բեռլինում հիմնադրել է «Թատերական էստրադա» թատրոնը, բեմադրել Վ. Գյոթեի «Գյոց ֆոն Բեռլիխինգեն» դրաման:

ԿՈԽ Յոզեֆ Անտոն (1768–1839), ավստրիացի գեղանկարիչ: Հեղինակ է կլասիցիզմի և վաղ ռոմանտիզմի ոգով բնապատկերների:

ԿՈԽ Ռոբերտ (1843–1910), գերմանացի մանրէաբան, ժամանակակից բակտերիաբանության և համաճարակաբանության հիմնադիրներից: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1884): Զևակերպել է միկրոօրգանիզմների հետ վարակիչ հիվանդությունների պատճառագիտ. կապի չափանիշներ (Կ-ի եռյակ): Բացահայտել է (1882) տուբերկուլոզի հարուցիչը («Կ-ի ցուպիկ»): Առաջարկել է վարակազերծման եղանակներ: Նոբելյան մրց. (1905):

ԿՈՒԽ, հայկ. ազգ. *ըմբշամարտի*: Կազմել է նաև ազգ. տոնախմբությունների, ուխտագնացությունների, հարսանիքների և այլ հավաքույթների անբաժան մասը: Դեռևս միջնադար. Հայաստանում գոյություն են ունեցել հատուկ տեղեր, որոնք կոչվել են գուպարատեղեր, մարզարաններ, մրցասպարեզներ, որտեղ մրցումները կազմակերպել և անցկացրել են հատուկ անձինք: Ըմբիշներից հայտնի են Սադուն Արծրունին (XIII դ.), Հակոբ Ջուղայեցին (XVII դ.), Սիմոն Փեհլիվոնը, Գագիկը ևն: 1922–ից ՀՀ-ում անցկացվել են Կ-ի մրցումներ, կազմվել է Կ-ի մրցումների կանոնադրություն: Մրցումն անցկացվում է 9x9 *մ* հատուկ գորգի վրա, երաժշտության ներքո: Այն սկսվում է պարով (1 *ր*), բուն գոտեմարտը տևում է 6–8 *ր*:

ԿՈԽԱՆՈՎՍԿԻ (Kochanowski) Յան (1530–1584), լեհ բանաստեղծ: Լեհ. ազգ. տաղաչափության հիմնադիրը: Գրել է նաև լատ.: Հեղինակ է «Համաձայնություն», «Սատիր...» (երկուսն էլ՝ 1564), «Դրոշ...» (1569) և այլ պոեմների, «Ֆրաշկի» (գիրք 1–3, 1584) կարճ, «Երգեր» (գիրք 1–2, հրտ.՝ 1586) սիրային և այլ բանաստեղծությունների ժող-ների, «Մերժում Հունաստանի դեսպաններին» (1578) պիեսի, «Լեհերենի ուղղագրություն» (հրտ.՝ 1592) աշխ-յան, փոխադրել է «Դավթի սաղմոսները» (1579):

ԿՈՒԽԵՐ (Kocher) Թեոդոր (1841–1917), շվեյցարացի վիրաբույժ, ժամանակակից որովայն. վիրաբուժության հիմնադիրներից: Առաջարկել է մի շարք վիրաբուժ. գործիքներ (կոչվում են նրա անունով): Աշակել է վիրահատ. մուտքեր դեպի խոշոր անոթները, վահանագեղձի վիրաբուժ. բուժման մեթոդներ: Նոբելյան մրց. (1909):

ԿՈՃԻՆՅԱՆ Միքայել Երվանդի (1919–1984), համաճարակաբան: Բժշկ. գիտ. դ-ր: Ներդրել է ռիկետսիոզների ախտորոշման նոր եղանակներ, բացահայտել տզային բծավոր տիֆի և Քյու-տենդի բնական օջախների առկայությունը Հայաստանում, կազմել ախտաբանաաշխարհագր. քարտեզ: Հետազոտել է քութեշով և թռչնախտով հիվանդացությունը, մասնակցել հանրապետությունում համաճարակ. բծավոր տիֆի վերացման աշխ-ներին:

ԿՈՃՈՒԿ, **բլդրղան, ղաշ, հերակլախոտ**, հովանոցազգիների (նախուրազգիներ) ընտանիքի բարձրացողուն խոտաբույսերի ցեղ: Ցողունի բարձր.՝ 2 *մ* և ավելի: Հայտնի է 100 տեսակ՝ հիմնականում Արլ. կիսագնդի բարեխառն գոտում, ՀՀ-ում՝ 7՝ բոլոր մարզերում: Մեղրատու է: Սատղաշ ցողունները և տերևներն ուտելի են: Որոշ տեսակներ գդտ. կենդանիների կեր են: Կան նաև դեղաբույսեր (ստամոքսի, մաշկի հիվանդությունների բուժման համար): Հյութը մաշկի վրա առաջացնում է բորբոքումներ:

ԿՈԿ (Coke) Էդուարդ (1552–1634), անգլիացի իրավաբան, ընդհ. իրավունքի մեկնաբան: 1613–16-ին՝ գլխ. դատավոր: 1620-ական թթ-ին՝ արսեյուտիզմի խորհրդարան. ընդդիմության ղեկ-ներից:

ԿՈԿ (Kock) Շառլ Պոլ դը (1793–1871), ֆրանսիացի գրող: Հեղինակ է «Կնոջս որդին» (1812), «Գուստավ կամ Թեթևամիտ տղամարդու սերը» (1821), «Փարիզյան սափրիչ» (1826), «Եղջյուրակիրը» (1832) ևն վեպերի, նաև պիեսների, վոդևիլների, բանաստեղծությունների և այլ գործերի: Հայ. են հրատարակվել «Կին, խաղ, գինի» (1880), «Պարոն Շուպլան» (1885) և այլ գործեր:

ԿՈԿ (հոլ.՝ kok), նավի խոհարար:

ԿՈԿԱՆԵԻ, կոկա, կոկաննազգիների ընտանիքի թուփ: Աշակվում է Հվ. Ամերիկայի և Ասիայի արևադարձներում: Տերևները պարունակում են *կոկաին*:

ԿՈԿԱԻՆ, ալկալոիդ, պարունակվում է *կոկաենու* տերևներում: Առաջացնում է ԿՆՀ-ի գրգռվածություն, ապա՝ ընկճվածություն, ճնշում է նյարդ. վերջույթների զգացողությունը: Օգտագործվում է որպես տեղային անզգայացնող միջոց: Հաճախակի օգտագործումը կարող է հանգեցնել **կոկաինամոլության** (թմրամոլության տարատեսակ):

«ԿՈԿԱ-ԿՈԼԱ» («Coca-Cola»), աննդի արդյան ընագավառի ընկ. ԱՄՆ-ի Ատլանտա ք-ում: Հիմնադրվել է 1886-ին: Զովացնող ըմպելիքների և ցիտրուս. մրգերից պատրաստված արտադրանքով աշխարհում խոշորագույնն է: 1995-ից ՀՀ-ում գործում է «*Կոկա-Կոլա Հելենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա*» ընկ.:

«ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ», ոչ ալկոհոլ. զովացուցիչ ըմպելիքներ («Կոկա-Կոլա», «Կոկա-Կոլա Լայթ», «Ֆանտա», «Սպրայտ» ևն) արտադրող ընկ.: ՀՀ-ում գործունեությունն սկսել է 1995-ից:

ԿՈԿԱՆԴ, ք. Ուզբեկստանի Ֆերգանայի մարզում: Բն.՝ 233 հզ. (2014): Երկթղ. հանգույց է:

ԿՈԿԱՆՈՎԱ Նևենա (1938–2000), բուլղար կինոդերասանուհի: ԲԺՀ ժող. արտիստ (1974): Նկարահանվել է «Ծխախոտ» (խորհրդ. էկրանին՝ ««Նիկոտիանայի» վերջը»), «Տեսուչը և գիշերը», «Դեղձեր գողացողը», «Ընդում» և այլ ֆիլմերում: ԲԺՀ Գ. Դիմիտրովի անվ. մրց. (1986):

ԿՈԿԱԲԲՕՔՍԻԼԱԶ, թիամինպիրոֆոսֆատ, պիրոֆոսֆորական թթվի և թիամինի (B_1 վիտամին) եթերը, կոֆերմենտ: Մասնակցում է կենդանի բջիջներում կետոթթուների և կետոշաքարների ապակարբօքսիլացման ռեակցիաներին: Օգտագործվում է որպես դեղորայք. պատրաստուկ (լավացնում է նյութափոխանակության կենսընթացները):

ԿՈԿԱՐՍ (Kokars) Իմանտս (1921–2011), լատիշ խմբավար: ԽՍՀՄ ժող. արտիստ (1986): «Զիեդոնիս» տղամարդկանց երգչախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր (1955–90), 1969–ից՝ Ռիգայի «Ավե սոլ» կամեր. երգչախմբի ղեկ.: 1965–ից՝ Լիտվայում երգի տոնի գլխ. դիրիժորներից:

Իտալիայի (Արեցցո, 1974), Ավստրիայի (Սպիտալ ան դեր Դրաու, 1983) և այլ միջազգ. մրցույթների 1-ին, Լատվ. ԽՍՀ (1974), ԽՍՀՄ (1979) Պետ. մրց-ներ:

ԿՈԿԵՐ (հուն.՝ kokkos – հատիկ), սովորաբար՝ անշարժ, գնդաձև բակտերիաներ: Բազմանում են լայն-յամբ կիսվելով: Կախված բջիջների կիսման թվից և միմյանց նկատմամբ տեղադրությունից՝ տարբերում են միկրոկոկեր, դիպլոկոկեր, ստրեպտոկոկեր, տետրակոկեր, սարցինիաներ, ստաֆիլոկոկեր: Լայնորեն տարածված են (հողում, ջրում, օդում): Ախտածին տեսակներն առաջացնում են թարախ. բորբոքումներ և հիվանդություններ, աննդ. թունավորումներ ևն:

ԿՈԿԹԵՅԼ (անգլ.՝ cocktail – բառացի՝ աքաղաղի պոչ), տարբեր խմիչքների խառնուրդ՝ սառույցով:

ԿՈԿԺԱԵՎ Արտեմ Միխայիլի (ծ. 1972), կոմպոզիտոր: Միխայիլ *Կոկժաևի* որդին: Հեղինակ է «Նատաշա» օպերայի, «Էշի կաշին» բալետի, սիմֆոնիաների, սիմֆ. պոեմների («Նոր Ավետարան ըստ Մատթեոսի» ևն), կամեր-գործիք. և այլ

երկերի: Առնո Բաբաջանյանի անվ., հայ-բելգ. «Ամադեուս» միջազգ. մրցույթի 1-ին մրց. (1996, Մոսկվա), «Պատանեկություն» ռուս. երաժշտ. մրց. (2006):

ԿՈԿԺԱԵՎ Միխայիլ (Կոկժայան Միքայել) Արտյոմի (ծ. 1946), կոմպոզիտոր: Արտեմ *Կոկժաևի* հայրը: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2015): ԵՊԿ պրոֆ. (1998): Հեղինակ է 6 սիմֆոնիայի, «Նահատակներին» (1998)՝ լար. նվագախմբի համար, «Հիշատակի օր» (1992), Կոնցերտ՝ թավջութակի և նվագախմբի (1993), ջութակի և նվագախմբի (1998), «Բանակար Սարյանի թեմաներով»՝ փող. կվինտետի համար, և այլ գործերի: Ա. Խաչատրյանի անվ. մրցույթի 1-ին մրց. (1993), ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2011):

ԿՈԿԻՆԱԿԻ Վլադիմիր Կոնստանտինովիչ (1904–1985), օդաչու: Ավիացիայի գեն-մայոր (1943): ԽՄ հերոս (1938, 1957): ԽՍՀՄ վաստ. փորձարկող օդաչու (1959): Կատարել է Մոսկվա–ԱՄՆ (1939) անվայրէջք թռիչք, սահմանել համաշխ. 22 ռեկորդ:

ԿՈԿԻՄՈՆ, հին բք Կիլիկիայի հս-արլ. սահմանում: XII դ–ից միացել է Կիլիկյան Հայաստանին: Ըստ ավանդազրույցի՝ Կիլիկիայի թագավորության անկումից հետո իշխան Հեթումի կին Զարմանուհին 300 մարտիկներով տիրել է Կ-ին և Կապան բերդին, հիմնադրել անկախ իշխանություն, որը գոյատևել է 65 տարի: Հետագայում Կ. ավերել են թուրք. նվաճողները:

ԿՈԿԼԵՆ (Coquelin) Բենուա Կոնստան (1841–1909), ֆրանսիացի դերասան, թատրոնի տեսաբան: 1860–ից (ընդմիջումներով)՝ Փարիզի «Կոմեդի Ֆրանսեզի» դերասան, 1897–1901-ին՝ «Պորտ Սեն Մարտեն» թատրոնի ղեկ.: Աչքի է ընկել կերպարների վերամարմնավորման վարպետությամբ (Ֆիգարո՝ Պ. Բոմարշեի «Ֆիգարոյի ամուսնությունը», Սիրանո՝ Է. Ռոստանի «Սիրանո դը Բերժըրակ», ևն):

ԿՈԿԿՈՆԵՆ (Kokkonen) Յոնաս (1921–1996), ֆինն կոմպոզիտոր: 1965–71-ին՝ Ֆինլանդիայի ԿՄ նախագահ: Հեղինակ է «Վերջին գայթակղություններ» (բեմ.՝ 1975) օպերայի, սիմֆոնիաների, «Հայելու միջով» (1977) երկի՝ կլավեսինի և 12 լարայինների համար, կվարտետների և այլ գործերի: Յ. Սիբելիուսի անվ. մրց. (1973):

ԿՈԿՇԱՐՈՎ, Նիկոլայ Իվանովիչ (1818–1892/93), ռուս հանքաբան և բյուրեղագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1866): Հանքաբան. ընկ-յան տնօրեն (1865–ից): Հեղինակ է «Նյութեր Ռուսաստանի հանքաբանության համար» (հ. 1–6, 1852–77) հիմնարար աշխ-յան:

ԿՈԿՇԵՏԱՈՒ (մինչև 1993-ը՝ Կոկչետավ), ք. Ղազախստանում, Ակմոլինսկի մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 141 հզ. (2013): Հիմնադրվել է 1820-ին, քաղաք է 1895–ից: Ունի համալսարան:

ԿՈԿՈՄԻԿՈՋ, կորիզապտղավորների մակարույծ սնկերով հարուցվող հիվանդություն: Բալենու, սալորենու ննի տերևների վրա առաջանում են կարմրավուն բծեր, ապա՝ անցքեր:

ԿՈԿՈՅԱՆ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԴՊՐՈՑ, հիմնադրվել է 1877-ին Նոր Նախիջևանում՝ վաճառական Կոկոյանի կտակի համաձայն: 1913-ին դարձել է գիմնազիա: Ունեցել է գիշերօթիկ բաժին: Փակվել է 1920-ին:

ԿՈԿՈՅՏԻ Էդուարդ Զաբեևիչ (ծ. 1964), Հվ. Օսիայի Հանրապետության նախագահ՝ 2001–11-ին:

ԿՈԿՈՇԿԱ (Kokoschka) Օսկար (1886–1980), ավստրիացի չեխ գեղանկարիչ, դրամատուրգ: Հեղինակ է նյարդ., հիվանդագին լարված ձևերով պատկերների («Երաժշտության ուժը», 1918–20), քնար. և հարուստ գուներանգով բնապատկերների («Վենետիկ», 1924), բնութագր. դիմանկարների («Ի. Մ. Մայսկի», 1942–43): Գրել է գրոտեսկ. դրամաներ («Մարդասպանները՝ կանանց հույսն են», 1907, ևն), հակաֆաշիստ. թեմայով («Կոմենսկի», բեմ.՝ 1939) պիես ևն:

ԿՈԿՈՇԿԻՆ Ֆեոդոր Ֆեոդորովիչ (1871–1918), ռուս իրավաբան, հրապարակախոս, կադետների կուս-յան առաջնորդ: 1917-ին նշանակվել է Ժամանակավոր կառ-յան վերահսկիչ: Սպանել են անարխիստները:

ԿՈԿՈՒ (Nuphar), **դեղին ջրաշուշան, նունուֆար**, հարսնամատազգիների ընտանիքի բազմամյա, կոճղարմատավոր, լողացող տերևներով և դեղին ծաղիկներով ջր. խոտաբույսերի ցեղ: Հայտնի է ավելի քան 10 տեսակ՝ Հս. կիսագնդի բարեխառն գոտում: Երբեմն աճեցնում են որպես գեղազարդիչ բույս: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ԿՈԿՈՍԻ ՅՈՒՂ, բուս. յուղ. ստացվում է կոպրայից: Օգտագործվում է հիմնականում օճառաեփման մեջ, կոսմետիկ միջոցներ պատրաստելու և մարգարինի արտադր-յան մեջ:

ԿՈԿՈՍՅԱՆ ԱՐՄԱՎԵՆԻ, հնդկընկուզենի, արմավենիների ընտանիքի ծառ: Բարձր.՝ 20–40 մ: Հնագույն ժամանակներից մշակվում է արևադարձներում (հիմնականում՝ Ասիայի առափնյա շրջաններում): Ընկույզի զանգվածը՝ մինչև 1,5–2,5 *կգ*: Պտուղը պարունակում է կոկոսի կաթ և յուղ:

ԿՈԿՈՍՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ, Քիլինգ, կորալյան ծագման կղզի Հնդ. օվկ-ում: Ավստրալիայի արտաքին տարածք է: Տարածքը՝ 14 *կմ*^{2}, բն.՝ 596 (2014): Վարչ. կենտրոնը՝ Վեստ Այլենդ:

ԿՈԿՈՎ, Վալերի Սուհամմեդովիչ (1941–2005), ՌԴ Կաբարդինա-Բալկար. Հանրապետության նախագահ՝ 1992–2005-ին: 1990-ին՝ Կաբարդինա-Բալկար. ԻԽՍՀ մարզկոմի 1-ին քարտուղար, 1990–91-ին՝ ԳԽ նախագահ:

ԿՈԿՈՎՑՈՎ, Պավել Կոնստանտինովիչ (1861–1942), ռուս արևելագետ, սեմագետ: Ս. Պետերբուրգի (1912), Ռուսաստանի (1917), ԽՍՀՄ (1925) ԳԱ-ների ակադ.: Ռուս. երբայագիտ-յան հիմնադիրը: Աշխ-ները վերաբերում են հրեական և հրեաարաբ. բանասիրությանը (հիմնականում՝ X–XII դդ.), սեմ. վիմագրության հայտնի՝ Պալմիրայի առևտր. համաձայնագրին: Հրատարակել է Նիբաբի արամեերեն արձանագրությունները (մ. թ. ա. IX դ.):

ԿՈԿՈՐԴ, մարդու և ողնաշարավոր կենդանիների շնչառ. համակարգի սկզբն. աճառ. բաժին՝ տեղադրված ըմպանի և շնչափողի միջև: Ապահովում է օդի անցումը շնչափող և արտաբերումը: Մասնակցում է ինչյունների առաջացմանը, որոնք կազմում են ձայնը:

ԿՈԿՈՐԴԱԲՈՐԲ, լարինգիտ (հուն.՝ larynx – կոկորդ), կոկորդի լորձաթաղանթի բորբոք. հիվանդություն: Դրսևորվում է հազով, խոպտությամբ, ձայնի կորստով:

ԿՈԿՈՐԴԱՇՆՉԱՓՈՂԱԲՈՐԲ, լարինգոտրախեիտ (< հուն. larynx – կոկորդ և tracheitis – շնչափողաբորբ), *կոկորդի* և *շնչափողի* միաժամանակյա բորբոքումը վիրուս. վարակի ժամանակ:

ԿՈԿՈՐԴԻԼՈՄՆԵՐ, ջր. սողունների կարգ: Երկ.՝ մինչև 7 *մ* (նեղոսյան Կ.): Արևադարձներում հայտնի է 21 տեսակ: Ապրում են գետերում, լճերում և ճահիճներում: Մսվում են հիմնականում ձկներով: Ընդգրկում է 3 ընտանիք՝ գավիալներ, ալիգատորներ և իսկական Կ.: Թվաքանակը խիստ կրճատվում է. 25 տեսակ և ենթատեսակ գրանցված են ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ԿՈԿՈՐԻՆՈՎ, Ալեքսանդր Ֆիլիպովիչ (1726–1772), ռուս. ճարտ.: Ռուսաստանի գեղարվ-ի ակադ-ի 1-ին տնօրենը (1761–ից): Պարզ նախագծերով, կոմպոզիցիոն և դեկորատիվ լուծումներով, մոնումենտալ հանդիսավորությամբ առանձնացող կառույցները (գեղարվ-ի ակադ-ի շենքը Ս. Պետերբուրգում, 1764–88, ծ. Բ. Մ. Վալլեն-Դելամոնտի հետ) նշանավորել են անցումը բարոկկոյից կլասիցիզմին:

ԿՈԿՈՒՇԵՆԻ, քարբեկազգիների ընտանիքի թփուտների ցեղ: Հատապտղատու բույս է: Հայտնի է 50 տեսակ, ՀՀ-ում՝ 1: Աշակում են եվրոպ. երկրներում: Ուտելի հատապտուղները պարունակում են շաքար, օրգ. թթուներ, B_1, P վիտամիններ, A նախավիտամին: Բերքատվությունը՝ 200–300 *գ/հա*: Մեղրատու է:

ԿՈԿ-ՍԱԳԻԶ, աստղածաղկազգիների ընտանիքի խոտաբույսերի *խատուտիկ* ցեղի կաուչուկատու բույս:

ԿՈԿՏՈ (Cocteau) Ժան Էժեն Քլեման (1889–1963), ֆրանսիացի գրող, նկարիչ, թատեր. գործիչ, կինոսցենարիստ, ռեժ.: Ֆրանսիայի ակադ-ի անդամ (1955): Հեղինակ է կուբո-ֆուտուրիզմին և դադաիզմին բնորոշ (այն արտահայտվել է նաև նկարչության մեջ) «Բանաստեղծություններ» (1922), «Օպերա» (1927) և այլ ժողների, երիտասարդ սերնդի խնդիրներին վերաբերող «Ինքնակոչ Թոմասը» (1923), «Դժվարահաճ երեխաները» (1929) վեպերի, «Օրփեոս» (1926), «Անտիգոնե» (1928), «Մարդկային ձայն» (1930), «Դժվարահաճ ծնողներ» (1938) և այլ պիեսների, «Օրփեոս» (1950), «Օրփեոսի կտակը» (1960) և այլ կինոսցենարների:

ԿՈԿՑԻԴԻԱՆԵՐ, սպորավորների տիպի նախակենդանիների կարգ: Հայտնի է ավելի քան 400 տեսակ, այդ թվում՝ *փարասպրազմները*: Առավելապես մարսողության օրգանների ներբջջ. մակաբույծներ են. առաջացնում են կոկցիդիոզներ:

ԿՈԿՑԻԴԵՆԵՐ, հավասարաթևների կարգի միջատների ենթակարգ: Երկ. սովորաբար 1–12 *մմ* է: Հայտնի է ավելի քան 3800 տեսակ՝ տարածված լայնորեն: Վնասում են արևադարձ., մերձարևադարձ. և ջերմատնային մշակաբույսերը: Կ-ի շարքին են դասվում որդանները և վահանակիրները:

«ԿՈՀԱՆ», գր., քաղ., տնտ. և հաս. պարբերաթերթ (1909–14, Կ. Պոլիս, 1914-ին՝ «Դայլայլիկ»): Տնօրեն-խմբ.՝ Հմայակ Արամյան, խմբ.՝ Գրիգոր Եղիկյան:

ԿՈՀԵՆ (Cohen) Էռնստ Յուլիուս (1869–1944), նիդեռլանդացի ֆիզքիմիկոս: ՌԳԱ արտ. թղթ. անդամ (1925, ԽՍՀՄ ԳԱ արտ. թղթ. անդամ՝ 1924–ից): Բացահայտել է անագի պլոտրոպ ձևերը (1899), ճնշման ազդեցությունը ֆիզքիմ. շարժընթացների վրա: Ներմուծել է «ֆիզիկական մաքուր նյութ» հասկացությունը: Զոհվել է Օսվենցիմում:

ԿՈՀԵՆ Հերման (1842–1918), գերմանացի փիլ., նորկանտականության մարբուր-

գյան դպրոցի հիմնադիրը: Կ. կարծել է, որ մտածողությունը ծնում է իմացության ոչ միայն ձևը, այլև բովանդակությունը: Ընդունել է բարոյագիտ–յան առաջնայնությունը գիտ–յան նկատմամբ, հուդայականությունը մեկնաբանել է «բարոյական մոնոթեիզմի» ոգով:

ԿՈՀԵՆ Մարսել (1884–1974), ֆրանսիացի լեզվաբան: Հեղինակ է սեմա–քամյան լեզուներին («Այժիրի հրեաների արաբերենը», 1912, ևն), լեզվի սոցիոլոգիայի խնդիրներին («Ժամանակակից լեզվաբանությունը և իդեալիզմը», 1958, ևն), ֆրանս–ի պատմությանը վերաբերող աշխ–ների: Ա. *Մեյեի* հետ խմբագրել է «Աշխարհիի լեզուները» (1924, 2–րդ վերամշկ. հրտ.՝ 1952) գիրքը:

ԿՈՀԵՆ Սթենլի (ծ. 1922), ամերիկացի կենսաքիմիկոս: Հետազոտել է կենդանիների աճման գործոնի կառուցվածքը և բջիջների զարգացման վրա այդ գործոնների ազդեցությունը: Բացահայտել է նյարդ. հյուսվածքի էպիդերմ. և աճման գործոնները: Նորելյան մրց. (1986, Ռ. *Լևի–Մոնտալչինիի* հետ):

ԿՈՀԵՐԵՆՏՈՒԹՅՈՒՆ (լատ.՝ cohaerentis – կապի մեջ գտնվող), շաղկապված, ժամանակ. համաձայնությամբ ընթացող մի քանի տատանող. կամ ալիք. շարժընթացներ: Տատանումները կոչվում են կոհերենտ, եթե դրանց փուլերի տարբերությունը ժամանակի ընթացքում մնում է հաստատուն կամ փոխվում է խիստ որոշակի օրենքով:

ԿՈՀԼԵՐ (Kohler) Յոզեֆ (1849–1919), գերմանացի իրավաբան, բանաստեղծ, գրականագետ: Ուսումնասիրել է իրավագիտ–յան և փիլ–յան համեմատ. պատմությունը, հետազոտել հին իրավունքի, այդ թվում՝ հին հայ իրավունքի պատմությունն ու համակարգը («Հայերի իրաւունքը», 1888, հայ.՝ 1889, «ՀԱ», «Հին ասորական և հայկական իրավունք», 1906, ևն): Հեղինակ է նաև գրականագիտ. աշխ–ների:

ԿՈՀՈՒՏ (Kohout) Պավել (ծ. 1928), չեխ գրող, դրամատուրգ: Հեղինակ է բանաստեղծությունների, բարոյականության խնդիրներին վերաբերող «Լավ երգ» (1952), «Այդպիսի սեր» (1957), «Օգոստոս, օգոստոս, օգոստոս» (1968), Յան Հուսի դատավարության մասին պատմ. թեմայով «Ecce Constantia» (բեմ.՝ 1985), «Զրոներ» (1998), «Էրոս» (2002) և այլ պիեսների, «Հակահեղափոխականի օրագրից» (1968, արգելվել է Չեխոսլովակիայում), «Որտեղ է թաղված շան գլուխը» (1987), «Դահիճ կինը» (1970) վեպերի, որտեղ պատկերել է հեղ. իդեալներից հիասթափված մարդուն:

«ԿՈՉԻԿԻ» («Հին գործերի գրառումներ»), ճապոն–ով պահպանված գր. առաջին խոշոր հուշարձաններից, տիեզերածն., հերոս. առասպելների և ասքերի ժող–ներ են, որոնք գրառվել են 712–ին, 1–ին անգամ հրատարակվել XVII դ–ում, վերահրտ.՝ XVIII դ–ում՝ Ն. Մոտոորիի ծնթգր–ներով:

ԿՈՂ, գվո Մեծ Հայքի Տայք նահանգ–ում՝ հա–մանուն բք–ով: IX դ–ի 2–րդ կեսին Կ. անցել է Աբխազ. թագավորությանը: X դ–ի 2–րդ կեսին եղել է Տայքի կյուրապաղատության, XI դ–ի սկզբից՝ Բյուզ. կայսրության, XII դ–ի վերջից՝ Վրաց թագավորության կազմում: XIII դ–ի 1–ին կեսին Կ. նվաճել են թաթար–մոնղոլները, XVI դ–ում՝ օսմ. թուրքերը: 1877–ին անցել է Ռուսաստանին (Կարսի մարզի կազմում): XX դ–ի սկզբին Կ. ուներ շուրջ 40 գյուղ: 1921–ին Կ–ի հայ բնակչությունը ենթարկվել է կոտորածի:

ԿՈՂԱԿՆԵՐ, *ծածանաձկների* ընտանիքի ձկներ: Մարմնի երկ.՝ մինչև 60 *սմ*, կ. զ.՝ 2,5 *կգ*: Թեփուկները խոշոր են, մարմինը գլանաձև է կամ կողքերից սեղմված, որովայնախոռոչի պատերը ծածկված են սև թաղանթով: ՀՀ գետերում տարածված են Կուրի, Արաքսյան և Սևանի (ընորոշ է միայն Սևանա լճին) Կ.:

ԿՈՂԱՆՅԱՐԴԱՎՈՐՆԵՐ, ծով. առավել պարզունակ փափկամարմինների ենթատիպ: Մեծամասնությունն ունի շարժուն հոդավորված խեցի: Նյարդ. համակարգը բաղկացած է 2 զույգ երկայն. ցողուններից (2–ը՝ կողքային): Հայտնի են 3 ժամանակակից դասեր՝ զրահավորներ, ակոսափորներ և կաուդոֆովեատներ: Տարածված են ծայրամաս. ծովերում:

ԿՈՂԲ, գետ ՀՀ Տավուշի մարզում, Կուրի աջ վտակը: Սկիզբ է առնում Գուգարաց լ–շղթայի հս.՝ Կոտմանի լ–ների Զիգ–կատար լ–գագաթի արմ. լանջից՝ 1200 *մ* բարձր–ից: Երկ.՝ 38 *կմ*, ավազանը՝ 232 *կմ*^{2}: Լեռն. գետ է՝ խորը և զառիթափ անտառապատ ափերով: Մնումը հիմնականում ձնաանձրևային է, վարարումը՝ ապրիլ–մայիսին: Զրերն օգտագործվում են ոռոգման նպատակով:

ԿՈՂԲԵՏԼՅԱՆ Երվանդ Գեորգիի (1888–1974), մաթեմատիկոս, երկրաֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1923, Փարիզի Սորբոնի համալսարան): 1953–64–ին՝ IBM ֆիրմայի մաթեմատիկոս–խորհրդական: Աշխ–ները վերաբերում են մաթ. շարքերի տեսությանը, երկրաֆիզիկային: «Մտրետչ» ԹՀՄ–ի ստեղծողներից է: Հսարել է եռաչափ շախմատը: ԻԻՀ «Նշան Էլմի» շքանշան (1939):

ԿՈՂԲԻ ԵՐԿԱԹԻ ՀԱՆՔԱՎԱՅՐ, ՀՀ Տավուշի մարզում՝ Կողբ գ–ից մոտ 3 *կմ* հս–արմ.: Հանքանյութը կազմված է հիմնականում մուշկետովիտ, մագնետիտ, հեմատիտ և պիրիտ միներալներից: Երկաթահանք. կուտակումներն առաջացնում են ոսպնյականման, երականման ու անկանոն հանքամարմիններ (երկ.՝ 70 *սմ*–24 *մ*): Հանքավայրի կանխատեսված պաշարները 2 մլն *տ* են՝ 30,5 % Fe–ի միջին պարունակությամբ:

ԿՈՂԲՈՓՈՐ, գվո Մեծ Հայքի Գուգարք նահանգ–ում: VII դ–ի «Աշխարհացոյց»–ում հիշատակվում է որպես Գուգարքի 3–րդ գվո: Տարածքը համապատասխանում է ներկայի ՀՀ Տավուշի մարզին: Արշակունիների օրոք պատկանել է տեղական փոքր նախարար. տանը: X–XI դդ–ում եղել է Լոռու թագավորության, իսկ XII–XIII դդ–ում՝ Զաքարյանների իշխանության կազմում:

ԿՈՂԵՐ, զույգ աղեղնաձև կորացած ոսկրեր, որոնք հոդավորվում են ողնաշարի հետ: Կրծոսկրի հետ կազմում են մարդու, սողունների, թռչունների և կաթնասունների կրծքավանդակը: Կ–ին են ամրանում շնչառության ժամանակ դրանք բարձրացնող և իջեցնող մկանները: Մարդու Կ. 12 զույգ են:

ԿՈՂԹ, գվո Մեծ Հայքի Արցախ նահանգ–ում: Մինչև թաթար–մոնղոլների տիրապետության հաստատումը (XIII դ–ի 1–ին կես) մտել է *Առանշահիկների* իշխանության մեջ, այնուհետև անցել է Զաքարյան իշխանապետության Վահրամյան ճյուղին: Ուշ միջնադարում Կ. բաժանվել է 2 մասի՝ Շամքոր գվո–ի և Զակամ գետահովտի: XVII դ–ի սկզբին երկուսն էլ ունեցել են իրենց մելիքությունները:

ԿՈՂՄՆԱՅՈՒՅՑ, 1. աշխարհի կողմերը որոշելու, տեղանքում կողմնորոշվելու սարք: Կիրառվում է նավագնացության, օդագնացության, աստղագիտ–յան մեջ, ռազմ. գործում: Հայտնագործվել է ավելի քան 2 հզ. տարի առաջ Չինաստանում: Տարբերում են մագնիս., գիրո–, ռադիո– և այլ Կ–ներ: 2. (Աստղագիտ.) (լատ.՝ Pyxis) համաստեղություն երկնքի Հվ. կիսագնդում՝ Առագաստ, Նավախել, Հիդրա, Պոմպ համաստեղությունների միջև: Հս. միջին լայն–յուններից երևում է ձմռանը:

ԿՈՂՄՆԱՅՈՒՑՅԱ ԲՈՒՅՍԵՐ, բուսատեսակներ, որոնց տերևները դասավորվում են հս–հվ ուղղությամբ (օր.՝ հազար, նվենի) և կեսօրին իրենց վրա ընկնող արևի ճառագայթների նկատմամբ կողքի են դարձած, որի շնորհիվ չեն գերտաքանում:

ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾ ՄԻՋՈՒԿՆԵՐ, բևեռացված միջուկներ, ատոմ. միջուկներ, որոնց սպինները տարածության մեջ բաշխված են ոչ թե քաոսային ձևով, այլ կողմնորոշված են որևէ ուղղությամբ:

ԿՈՂՐ, հաստացած հիմն. սոնակով ծաղկաբույլ, որի վրա խիտ տեղավորված են նստադիր ծաղիկները (օր.՝ փողաշուշանի, նվիկի, խնկեղեգի): Կ. է կոչվում նաև եգիպտացորենի պտղաբույլը:

ԿՈՂՔԱԼՈՂՆԵՐ, **տարաոտ խեցգետնակերպներ**, բարձրակարգ սարդակերպների ենթադասի անողնաշարների կարգ: Երկ.՝ 0,5–28 *սմ*: Լողում են կողքի վրա: Հայտնի է մոտ 4,5 հզ. տեսակ: Մնունդ են շատ արդյունագործ. ձկների, փոկերի, կետերի և որոշ թռչունների համար:

ԿՈՂՔԱՅԻՆ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Մեծ Կովկասի լեռն. համակարգում: Զգվում է Գլխ. կամ Զրբաժան լ–շղթային զուգահեռ՝ հս–ից: Բարձր.՝ մինչև 5642 *մ* (*Էլբրուս* լ.): Տարածված են բարձրլեռն. մարգագետինները, կենտր. մասում կան սառցաղաշտեր:

ԿՈՂՔԱՎԱՉ ԿՐԻԱՆԵՐ (Pleurodira), սողունների կարգ: Պարանոցը երկար է, կարող են պտտեցնել դեպի կողքերը և գլուխը թաքցնել զրահի տակ: Ունեն 2 ընտանիք՝ պելոմեդուզաներ (14 տեսակ) և օձավիզ կրիաներ (31 տեսակ): Առավել տարածված է տարատարուգա տեսակը (ապրում է Ամազոն գետի շրջակայքում): Որոշ Կ. կ. ունեն արդյունագործ. նշանակություն (միսը, ձուն օգտագործում են որպես սնունդ):

ԿՈՃԱՊՂՊԵՂ, **իմբիր, տաքկոճ**, կոճապղպեղազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 80–90 տեսակ՝ Արլ. Ասիայում, Հվ. Աֆրիկայում, Ավստրալիայում: Ի. սովորականը մշակվի համեմունք և դեղաբույս է Հնդկաստանում, Ճապոնիայում, Ավստրալիայում ևն: Ընդերացողունը պարունակում է եթերայուղեր, ֆենոլանման գինգերոլ նյութ:

ԿՈՃՂԱՄՆԿԵՐ, **մեղրասնկեր**, ագարիկոնների խմբի թերթավոր սնկերի շարքի անվանումը: Աճում են խմբերով՝ կոճղերի, ընկած ցողունների, ծառերի արմատների վրա: Սապրոֆիտներ են, մակաբույծներ (առաջացնում են ածող ծառերի փտում): Կ. սովոր., ամառ., մարգագետնայինն ուտելի են: Կ. կեղծը թունավոր է (դեղնականաչավուն է և դառը համի):

ԿՈՃՂԱՐՄԱՏ, բազմամյա խոտաբույսերի ստորգետնյա ընձյուղը: Արմատից տարբերվում է ծայրապատյանի բացակայությամբ, պարենքիմի և թեփուկանման մանր տերևների առկայությամբ: Որոշ բույսերի Կ–ները պարունակում են դեղանյութեր

(կատվախոտ), ներկանյութեր (կղմուխ), աղաղանյութեր (մաստիտեղ) ևն:

ԿՈՇՂԵԶԱՅԻՆ ԼՈՒԾԱՆՔ, բուլբար պարալիչ, գանգուղեղ. նյարդերի (լեզվաբմպան., թափառող, ենթալեզվային, որոնց կորիզները տեղակայված են երկարավուն ուղեղում) ախտահարման համախտանիշ: Դրսևորվում են հիմնականում կլման (դիսֆագիա) և խոսքի (դիզարտրիա) խանգարումներով:

ԿՈՄԱ (հուն.՝ koma – խոր քուն), 1. (ֆիզ.) պատկերի խոտորման տեսակ օպտիկ. համակարգում, որի հետևանքով առարկայի կետն ընդունում է անհամաչափ բծի տեսք: 2. (ֆիզ.) գիսաստղի միջուկի գազ. թաղանթ: 3. (բժշկ.) կյանքին վտանգ սպառնացող վիճակ, որը բնորոշվում է գիտակցության կորստով, արտաքին գրգիռների հանդեպ ռեակցիայի թուլացմամբ կամ բացակայությամբ, ռեֆլեքսների մարմամբ՝ մինչև անհետանալը, շնչառության խորությամբ և հաճախությամբ, ջերմակարգավորման խանգարմամբ, երակազարկի դանդաղեցմամբ կամ հաճախացմամբ: Խոր Կ. դասվում է սահմանային (տերմինալ) վիճակների շարքին:

ԿՈՄԱՆԴՈՍ (անգլ.՝ commandos), 1. բուրերի աշխարհազոր. ջոկատներ, որոնք գործել են 1899–1902-ի անգլո-բուր. պատերազմի ժամանակ: 2. Հատուկ նշանակության ծով. հետևազորի և օդաղեսանտ. զորքերի կազմավորումներ Մեծ Բրիտանիայի ԶՈՒ-ում՝ 1940-ից նախատեսված դիվերսիոն-հետախուզ. գործողությունների համար: 3. ՂԱՊ-ում *Շուշիի* ռազմագործողության հրամ. Արկադի *Տեր-Թադևոսյանին* տրված պատվանունը:

ԿՈՄԱՆԴՈՐ (ֆրանս.՝ commandeur), 1. բարձր կոչում միջնադար. ասպետ. և կրոն. ուխտերում: 2. Նավակումբի նախագահ ԽՍՀՄ-ում (մինչև 1926-ը), Արմ. Եվրոպայում և ԱՄՆ-ում: 3. Զինվ. կոչում մի շարք երկրների նավատորմերում: 4. Զիարշավների, դահուկավազքերի և սպորտ. (ավտոմոբիլ, մոտոցիկլետ, հեծանիվ ևն) մրցումների ղեկ.: 5. **Կապիտան-Կ.**, Անգլիայում, Նիդեռլանդներում և այլ երկրներում՝ ծովակալի աստիճան չունեցող նավախմբի պետ:

ԿՈՄԱՆԴՈՐՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ, կղզեխումբ Խաղաղ օվկ-ի և Բերինգի ծովի սահմանում: Մտնում են ՌԴ Կամչատկայի մարզի մեջ: Տարածքը՝ 1848 *կմ²*, բն.՝ 676 հզ. (2010): Ռելիեֆը լեռնային է: Բարձր.՝ 751 *մ*: Կոչվել են ի պատիվ կոմանդոր Վ. Ի. *Բերինգի*, որը 1741-ին հայտնագործել է կղզիները: Կ. կ-ում 1993-ին առանձնացվել է կենսոլորտ. Կոմանդորյան արգելոցը (մակերեսը՝ 34,6 հզ. *կմ²*):

ԿՈՄԱՆՉՆԵՐ (ինքնանվանումը՝ նումու, նիմինի), հնդկացի. ժողտ ԱՄՆ-ում (հիմնականում՝ Օկլահոմա նահց-ում): Ընդհ. թիվը՝ 10,5 հզ. (2000): Լեզուն՝ կամանչե (պատկանում է յուտա-ացտեկյան լեզուների նումիական ճյուղին): Մեթոդականներ, ավետարանականներ և պեյոտականներ են: 1860–70-ական թթ-ին առանձնացվել են ռեզերվացիաներում:

ԿՈՄԱՐ ԵՎ ՄԵԼԱՄԻԴ (Komar and Melamid), ռուս. նկարիչներ: 1977-ից՝ ԱՄՆ-ում: **Կոմար Վիտալի Անատոլևիչ** (ծ. 1943) և **Մելամիդ Ալեքսանդր Դանիլովիչ** (ծ. 1945), 1965–2003-ին աշխատել են միասին: Մոսկովյան անդերգրաունդի ներկայացուցիչներ: 1972-ին ստեղծել են սոց-արտ ուղղությունը: Հեղինակ են ինստալացիաների, ժամանակակից արվ-ի մասին էսսեների, «Բանաստեղծություններ Մահվան մասին՝ ստեղծագործություններ սոց-արտ ոճով» գրքի (1999):

ԿՈՄԱՐՈՎ Վլադիմիր Լեոնտևիչ (1869–1945), ռուս բուսաբան, աշխարհագետ, մանկավարժ և գիտ-յան կազմակերպիչ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1925, ՌԳԱ ակադ.՝ 1920-ից), փոխնախագահ (1930–36) և նախագահ (1936-ից): Սոց. աշխ. հերոս (1943): «ԽՍՀՄ-ի ֆլորան» (հ. 1–30, 1934–64) տեղեկատուի ստեղծողներից: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1942):

ԿՈՄԱՐՈՎ Վլադիմիր Միխայլովիչ (1927–1967), ԽՍՀՄ տիեզերագնաց-օդաչու (1964), գնդ.: ԽՄ հերոս (1964, 1967, հետմահու): Թռել է «Վոսխոդ» (1964-ի հոկտ.) և «Սոյուզ-1» (1967-ի ապրիլ) տիեզերանավերով: Զոհվել է թռիչքի ծրագրի ավարտին:

ԿՈՄԱՐՈՎ Ֆեդոր Իվանովիչ (ծ. 1920), ռուս թերապևտ, գինվ. բժիշկ: Բժշկ. ծառայության գեն-գնդ. (1977): ԽՍՀՄ ԲԳԱ (1978), ՌԳԱ (2013) ակադ.: Սոց. աշխ. հերոս (1980): Աշխ-ները վերաբերում են մարսողության օրգանների ֆիզիոլոգիային և ախտաբանությանը, սրտային անբավարարության ախտորոշմանը և բուժմանը, ռազմադաշտ. թերապիային:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1980):

«ԿՈՄԲԱ» (Combat – մարտ), *Դիմադրության շարժման* հայրենասիր. կազմ-յուն Ֆրանսիայի հվ-ում 1941–44-ին:

ԿՈՄԲԱՏԱՆՏՆԵՐ (ֆրանս.՝ combatant – ռազմիկ, զինվոր), միջազգ. իրավունքում՝ անձինք, որոնք ընդգրկված են պատերազմող կողմի ԶՈՒ-ի կազմում և անմիջականորեն մասնակցում են ռազմ. գործողություններին: Կ. են նաև ժող. աշխարհազորի, կամավոր. ջոկատների, դիմադրության շարժումների մասնակիցները, թշնամու դեմ տարերայնորեն մարտի ելած բնակչությունը, ինչպես նաև քաղաքաց. և ազգ-ազատագր. պատերազմների մասնակիցները, եթե ունեն հրամ-ներ և ենթարկվում են պատերազմի օրենքներին:

ԿՈՄԲԻՆԱՏՈՐԻԿԱ, մաթ-ի բաժին. ուսումնասիրում է վերջավոր թվով օբյեկտների համակցությունների (կոմբինացիաներ), երկրչփ. պատկերների դասավորությունները ևն:

«ԿՈՄԵԴԻ ՖՐԱՆՍԵԶ» («La Comédie-Française»), **«Թեատր Ֆրանսե»** («Théâtre-Français»), ֆրանս. դրամատիկ. թատրոն: Հիմնադրվել է 1680-ին Փարիզում, դարձել դերասան. և ռեժ. արվ-ի դպրոց: «Կ. Ֆ.»-ում խաղացել են ճանաչված դերասաններ Ֆ. Ժ. *Տալման*, Է. Ռաշելը, Ս. *Բեռնարը*, Բ. Կ. Կոկլենը, Լ. Ժուվեն, Ժ. Լ. Բառոն և ուր.: Պահպանելով *կլասիցիզմի* ավանդույթները՝ խաղացանկում ընդգրկել են Մոլիերի, Պ. Կոռնելի, Ժ. Ռասինի, Պ. Բոմարշեի ստեղծագործությունները:

ԿՈՄԵԴԻԱ ԴԵԼԼԱՐՏԵ (իտալ.՝ Commedia dell'arte – դիմակների կատակերգություն), իտալ. թատրոնի տեսակ (XVI–XVII դդ.), խոսքը բեմում հորինվել է հանպատրաստից՝ խաղի ընթացքում: Կերպար-«դիմակներ» են Բրիգելլա, Առլեկին, Պուլչինելլա, Կոլոմբին ծառաները, աչքաբակ վաճառական Պանտալոնեն, թեթևամիտ և վախկոտ Կապիտանը, շատախոս Դոկտորը, մանրախնդիր, պնդերես Տարտալիան և ուր.: Այդ թատրոնի տարրեր կային նաև Կ. Գոցցիի «Արքայադուստր Տուրանդոտ»-ի բեմադրության մեջ՝ Ե. Բ. Վախթանգովի բեմադրությամբ:

ԿՈՄԵԴԻԱ-ԲԱԼԵՏ (ֆրանս.՝ comédie-ballet), խորեոգրաֆիկ տեսարաններով, երբեմն՝ նաև վոկալ համարներով կոմեդիա: Ձևավորվել է XVII–XVIII դդ-ում, հիմնադիրներ՝ Մոլիեր («Երևակայական հիվանդ», «Քաղքենին՝ ազնվական» ևն) և Ժ. Բ. Լյուլլի: Կ-բ. նպաստել է ֆրանս. երաժշտ. թատրոնի զարգացմանը:

ԿՈՄԵԼԻՆԱ (Commelina), կոմելինազգիների ընտանիքի խոտաբույսերի ցեղ: Հայտնի է ավելի քան 200 տեսակ՝ հիմնականում արևադարձներում և մերձարևադարձներում: Սովոր. Կ. Հեռավոր Արևելքում (որտեղից բերվել է Սիբիր և Կովկաս) կոչվում է կապուտաչյա կամ լաջվարդ (ծաղկաթերթիկները պարունակում են կապույտ ներկ): Կարանտինային մոլախոտ է: Որոշ տեսակներ մշակում են որպես գեղազարդիչ և բանջար. բույս:

ԿՈՄԵՆՍԿԻ (Komenský) Յան Ամոս (1592–1670), չեխ մանկավարժ-հումանիստ, հաս. գործիչ, գրող: Դիդակտիկայի հիմնադիրը: Առաջադրել է մայրենի լեզվով համընդհ. կրթություն ստանալու գաղափարը, մշակել է միասն. դպրոց. համակարգ: Ըստ Կ-ու՝ յուրաքանչյուր պետություն պետք է ունենա բարձրագույն դպրոց՝ ակադեմիա՝ 18–24 տարեկանների համար: Հեղինակ է «Մեծ դիդակտիկա» (1633–38), «Լեզուների և բոլոր գիտությունների բաց դուռ» (1631), «Մայրական դպրոց» (1632), «Զննական աշխարհի նկարներով» (1658) և այլ աշխ-ների:

ԿՈՄԻ, Կոմի Հանրապետություն, վտմ ՌԴ Հս-արմ. դաշն. սբկրուգում: Տարածքը՝ 416,8 հզ. *կմ²*, բն.՝ 864 հզ. (2015): Վարչ. կենտրոնը՝ *Սիկտիվկար*: Ազգ. կազմը՝ կոմիներ (23,7 %), ռուսներ (65,1 %), թաթարներ (4,2 %) ևն: Կազմված է 12 վարչ. շրջաններից, 10 քաղաքից, 29 քտա-ից: Քաղ. բն.՝ 75,9 %: Կ. թղթի, ֆաներայի և թաղանթանյութի արտադր-յան առաջատարն է ՌԴ-ում: Զարգացած է գղտ-յունը, եղջերվաբուծությունը, մորթատու գազանաբուծությունը: Կազմավորվել է 1921-ին՝ որպես ԻՄ, 1936-ից՝ ԻԽՍՀ, այժմյան անվամբ՝ 1992-ից:

ԿՈՄԻ-ՋԻՐՅԱՆԵՐԵՆ, կոմի ժողղ-ի լեզուն: Պատկանում է ուգրո-ֆինն. լեզուների պերմական ճյուղին: Գրի հիմքում ռուս. այբուբենն է:

ԿՈՄԻԿՅԱՆ Վարդան Մինասի (1915–1998), գրող, խմբ.: 1939-ին՝ Կ. Պոլսի «Պատկեր» շարաթաթերթի գր. էջի, 1949-ին՝ Սանուց միության «Հանդէս մշակոյթ» պարբ-ի խմբ.: Հեղինակ է «Բարի եկար, սէր» (1958), «Համրիչի հատիկներ» (1993) պատմվածքների ժող-ների: ՀԱԵ «Սբ Ներսես Շնորհալի» շքանշան (1994):

ԿՈՄԻՍԱՐԺԵՎՍԿԱՅԱ Վերա Ֆեոդորովնա (1864–1910), ռուս. թատրոնի դերասանուհի: Ֆ. Պ. *Կոմիսարժևսկու* դուստրը, Ֆ. Ֆ. *Կոմիսարժևսկու* քույրը: 1904-ին հիմնադրել է ժամանակակից խաղացանկով սեփ., ավելի ուշ՝ սիմվոլիստ. կողմնորոշման թատրոն (գործել է մինչև 1909-ը): Կ-ի խաղին բնորոշ էր խոռվահույզ քնարականությունը (Լարիսա՝ Ա. Ն. Օստրովսկու «Անօժիտը», Նորա՝ Հ. Իբսենի «Նորա», Բեատրիս՝ Մ. Մետեռլինկի «Քույր Բեատրիս», Նինա՝ Ա. Պ. Չեխովի «Ճայը», առաջին դերակատարը, ևն): 1959-ին Կ-ի անունով է կոչվել Ս. Պետերբուրգի դրամատիկ. թատրոնը (հիմն.՝ 1944):

ԿՈՄԻՍԱՐԺԵՎՍԿԻ Ֆեոդոր Ֆեոդորովիչ (1882–1954), ռուս. ռեժ., մանկավարժ, թատրոնի տեսաբան: Ֆ. Պ. ***Կոմիսարժևսկու*** որդին, Վ. Ֆ. ***Կոմիսարժևսկայայի*** եղբայրը: Թատեր. ստուդիայի (1910), Վ. Ֆ. Կոմիսարժևսկայայի անվ. (1914), ստուդիական նոր և այլ թատրոնների հիմնադիր: Յ. Վ. Գյոթեի «Ֆաուստ» (1912), «Ապուշը» (ըստ Ֆ. Մ. Դոստոևսկու, 1913), Վ. Շեքսպիրի «Փոթորիկ» (1919) բեմադրություններում օգտագործել է թատեր. արտահայտչության պայմանականորեն-ընդհանրացված ձևեր: 1919–ից Մեծ Բրիտանիայում բեմադրել է ռուս դրամատուրգների (Ա. Պ. Չեխով և ուր.) պիեսներից:

ԿՈՄԻՍԱՐԻԱՏ, 1. հատուկ իրավասություն ունեցող պետ. մարմինների անվանումը, օր.՝ ԽՍՀՄ–ում՝ Ջինվ. Կ., Ժող. Կ.: 2. XVIII դ.–1860-ական թթ–ին բանակների մատակարարմամբ զբաղվող զինվ. գերատեսչ. հիմնարկ:

ԿՈՄԻՏԱՍ (Սողոմոն Գևորգի Սողոմոնյան, 1869–1935), կոմպոզիտոր, երաժշտագետ, երգիչ, խմբավար: Հայ ազգ. կոմպոզիտոր. դպրոցի հիմնադիրը: Կուսակրոն աբեղա (1894, անվանակոչվել է Կոմիտաս), վրդ. (1895): Կ–ի գործունեության մեջ առավել կարևոր են ստեղծագործ., հավաքչ. ու գիտ. աշխ–ները: Նրա գրառած ժող. երգերում արտահայտվում են հայ ազգ. ոճն ու լեզուն, արտահայտչամիջոցների բազմազանությունն ու ինքնատիպությունը: Կ–ի հեթանոս. ***հորովելները***, «Սասունցի Դավիթ» ու «Մհկաց Միրզա» վիպ. ասերգները, միջնադար. ***անպոնիները*** և հոգևոր տաղերը պատմամշակութ. խոշոր հայտնագործություններ են, հայկ. գեղջկ. երգերը՝ ժող. երգարվ–ի յուրատեսակ պատմագրություն: Կարևոր են նաև Կ–ի՝ ժող. և հոգևոր երաժշտության միասնության հիմնադրույթը և ինագույն խազագրությանն առնչվող մտահանգումները: Կ–ի ստեղծագործությունը բաժանվում է 2 հատվածի՝ ժող. կամ հոգևոր սկզբնաղբյուրի վրա հիմնված («Գարուն ա», «Քելեր, ցոլեր», «Լոռու գութաներգ», «Ծիրանի ծառ», «Անտունի», «Լուսնակն անուշ» ևն) և բուն հեղինակային գործեր [«Առ գետս Բաբելացւոց» սաղմոսը, «Քաղաքավարության վնասներ» երաժշտ. պատկերները (Հ. Պարոնյանի խոսքերով), «Ո՞ւր ես գալի, այ գարուն» կանտատը (Հ. Հովհաննիսյանի խոսքերով), «Մութն էր երկինքը» ռոմանսը, «Կաքավի երգը» (երկուսն էլ՝ Հ. Թումանյանի խոսքերով) ևն], որտեղ նկատելի է Կ–ի բազմաձայնության բացառիկ ինքնատիպ կիրառումը, ժամանակակից եվրոպ. կոմպոզիցիոն միջոցների համադրումը:

«ԿՈՄԻՏԱՍ», երաժշտ. ընկ.: Գործել է 1919–22–ին, հիմնադրվել է Թիֆլիսում՝ Ֆ. ***Հարությանի*** նախաձեռնությամբ: Այսրկովկասի հայաբնակ վայրերում տարածել է Կոմիտասի ստեղծագործությունները, կազմակերպել համերգներ, դասախոսություններ, հուշ–երեկոներ ևն: Գործունեությանը մասնակցել են Ռ. Մելիքյանը, Հ. Հովհաննիսյանը, Ա. Այվազյանը, Ա. Բաբայանը, Մ. Բարաթովան և ուր.:

«ԿՈՄԻՏԱՍ», հայկ. խառը երգչախումբ: Հիմնադրվել է 1926–ին Բուխարեստում: Ղեկ–ներ՝ Մ. Բոթեզ, Կ. Հարությունյան, Արա Մանաշ: Երկացանկում՝ հայկ. ժող., հայ կոմպոզիտորների, ռումին և այլ ժողդ–ների երգեր, դաս. երաժշտության նմուշներ, նաև Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի համերգ. կատարումը:

«ԿՈՄԻՏԱՍ», հայկ. խառը երգչախումբ: Հիմնադրվել է 1932–ին Ռուսեում (Բուլղարիա): Հիմնադիրներ՝ Ա. Բերբերյան, Է. Սաֆարյան, ղեկ.՝ Է. Անգելով, խմբավարներ՝ Կ. Կիրկորով (1948–ից), Խ. Միհրանյան (1952–ից): Երգացանկում՝ հայ, բուլղար և այլ ժողդ–ների երգեր, դաս. երաժշտության նմուշներ: ԲԺՀ «Կիրիլ և Մեֆոդի» շքանշան (1960):

«ԿՈՄԻՏԱՍ», երաժշտ. հրտչ–յուն: Հիմնադրվել է 1996–ին Երևանում: Հիմնադիր–տնօրեն՝ Ռուզաննա Եսայան: Լույս է ընծայում երաժշտ. դասագրքեր և ձեռնարկներ, հայ երաժշտության դասականների ու ժամանակակիցների ստեղծագործություններ և տարաբնույթ երկեր (մեծ մասը՝ 1–ին անգամ):

ԿՈՄԻՏԱՍ Ա. ԱՂՅԵՑԻ, **Շինող** (ծ. թ. անհտ–628), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 613–ից: Տիզբոնում մասնակցել է Պարսից ժողովին, ներկայացրել Հայ եկեղեցու Հավատո գիրը: Մասնակցել է «Կնիք հավատոյ» հականեստոր. և հակաքաղկեդոն. դավանաբան. ժող–ի կազմմանը: Կ. Ա Ա. ծավալել է շին. և հոգևոր–մշակութ. գործունեություն:

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՔԱՌՅԱԿ, հիմնադրվել է 1924–ին Մոսկվայում. Ավետ Գաբրիելյան (1–ին ջութակ), Լևոն Օհանջանյան (2–րդ ջութակ), Միքայել Տերյան (ալտ), Սերգեյ Ասլամազյան (թավջութակ): 1931–ից՝ պետ., 1932–ից՝ Կոմիտասի անվ., 1934–ից՝ ՀՀ վաստ. կոլեկտիվ, 2014–ից՝ ազգ.: Կազմը 2010–ից՝ Է. Թադևոսյան (1–ին ջութակ), Ս. Երիցյան (2–րդ ջութակ), Ա. Կոսեմյան (ալտ), Հ. Վարդանյան (թավջութակ): Երկացանկում՝ արևմտաեվրոպ., ռուս. և հայկ. (մասնավորապես՝ Կոմիտասի երգերի մշակումներ) երաժշտության նմուշներ: Գեղ. ղեկ–ներ՝ Ավետ Գաբրիելյան (1925–76), Էդվարդ Թադևոսյան (1976–ից): ՀԽՍՀ Պետ. մրց. (1965):

ԿՈՄԻՏԱՍԻ ԹՎԱՆԳԱՐԱՆ–ԻՆՍՏԻՏՈՒՏ, հիմնադրվել է 2015–ին Երևանում: Գործում է Կոմիտասի անվ. գբոսայգում՝ նախկին մշակույթի պալատի (ճարտ.՝ Կորյուն Հակոբյան) վերակառուցված շենքում (ճարտ.՝ Արթուր Մեսչյան): Նպատակը կոմիտասագիտ–յան զարգացմանը, Կոմիտասի ստեղծագործ. ժառանգության ուսումնասիրությանը և տարածմանը նպաստելն է: Ունի 8 մշտ. և ժամանակավոր ցուցադրություններ, համերգասրահ, ԳՀ կենտրոն, երաժշտ. ստուդիա, գրադարան, հրտչ–յուն: Տնօրենն՝ Նիկոլայ Կոստանդյան:

ԿՈՄԻՔՍ (անգլ.՝ comic – ծիծաղաշարժ), նկարների շարք՝ կարճ տեքստերով, որոնք կազմում են կապակցված պատմություն: Սկզբնավորվել է 1830–ական թթ–ին Շվեյցարիայում (Ռ. Տյոպֆրի ալբոմները), ամրապնդվել կինոյում, ապա՝ լրագրերում (ԱՄՆ): XX դ–ի կեսին Կ. դարձել է զանգված. մշակույթի հանրամատչելի ժանրերից, 2–րդ կեսին հաստատվել է որպես արվ–ի ինքնուրույն տեսակ:

ԿՈՄԼԵՎԱ Գաբրիելա Տրոֆիմովնա (ծ. 1938), ռուս. բալետի արտիստուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1983): 1957–88–ին՝ Լենինգրադի ՕԲԹ–ի մենապարուհի (Ժիզել՝ Ա. Ադանի «Ժիզել», Օդետա–Օդիլիա, Ավրորա՝ Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճը», «Քնած գեղեցկուհին», ևն), 1979–ից՝ մանկավարժ–փորձավար:

Բալետի պարողների միջազգ. մրցույթի 2–րդ (1966), ՌԽՖՍՀ Պետ. (1970) մրց–ներ:

ԿՈՄՄԱԳԵՆԵ, **Կումմախա, Կումմուխու**, հնագույն երկիր Եփրատի արմ. ափին՝ ներկայի Թուրքիայի Մալաթիա վիլայեթի տարածքում: Գլխ. ք–ը ***Սամոսատն*** էր: Աքեմենյանների օրոք Կ. կազմել է հայկ. սատրապության, ապա՝ Երվանդունիների հայկ. պետության մաս: Մ. թ. ա. III դ–ի 1–ին կեսին ստեղծվել է ***Ծոփքի*** և Կ–ի միացյալ պետությունը: Մ. թ. ա. I դ–ի 2–րդ կեսին Կ–ում հաստատվել է Հռոմի գերիշխանությունը: XI դ–ում Կ–ի տարածքը մտել է Փիլարտոս Վարաժնունու իշխանապետության մեջ, ապա մինչև XIV դ–ի վերջը՝ Կիլիկիայի հայկ. պետության հսկողության տակ: Մ. թ. ա. I հզ–ամյակի 2–րդ կեսից մինչև 1915–ը Կ–ում ապրել է հայ բնակչություն:

ԿՈՄՅԱԹ (Komjat) Ալադար (1893–1937), հունգար բանաստեղծ: Հունգ. գրկ–յան մեջ հեղ. պոեզիայի հիմնադիրներից: Հեղինակ է «Կանչ» (1917), «Ուզում ենք ամեն ինչ» (1931), «Հողը շարժվեց» (1937) և այլ բանաստեղծությունների ժող–ների:

ԿՈՄՅՈՒՆԻԿԵ (ֆրանս.՝ communiqué, < լատ. communicato – հաղորդագրություն), պաշտոն. հաղորդում միջազգ. պայմանագրերի, համաձայնագրերի բանակցությունների արդյունքների, երկրի ներքին իրադարձությունների (համաժողովներ, խորհրդակցություններ, որոշումներ), ռազմ. գործողությունների ընթացքի մասին:

ԿՈՄՆԵՆՈՄՆԵՐ, կայսեր. հարստություն Բյուզանդիայում՝ 1081–1185–ին: Հիմնադրել է ***Ալեքսիոս I***–ը: Հարստությունը փաստացի սկզբնավորել է Իսահակ ***Կոմնենոսը*** (1057–59): Վերջին Կ.՝ Անդրոնիկոս I–ի հետնորդները, կառավարել են 1204–1461–ին Տրապիզոնի կայսրությունում՝ ընդունելով «Մեծ Կոմնենոսներ» պատվանունը:

ԿՈՄՈԴՅԱՆ ՎԱՐԱՆ, վարանների ընտանիքի սողուն: Երբեմն անվանում են «Կոմոդա կղզու հրեշ» կամ «ցամաքային կոկորդիլոս»: Ժամանակակից ամենամեծ մողեսն է: Երկ.՝ մինչև 3 *մ*, կ. զ.՝ մինչև 150 *կգ*: Ապրում է Մալայան կղզեխմբի մի քանի կղզիներում: Փորում է մինչև 5 *մ* խորյան բներ: Մնվում է սմբակավորներով, կապիկներով, կենդ. մնացորդներով: Երբեմն հարձակվում է մարդկանց վրա: Գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում: Պահպանվում է ***Կոմոդո*** կղզում, որն ունի ազգ. պարկի կարգավիճակ:

ԿՈՄՈԴՈ (Komodo), կղզի Մեծ Զոնդյան կղզեխմբում՝ Ինդոնեզիայում: Տարածքը՝ 494 *կմ*^{2}: Մակերևույթը բլրոտ է՝ մինչև 735 *մ* բարձր–յամբ: Պապանվել են հսկա մողեսներ (տես ***Կոմոդյան վարան***): Գործում է «Կոմոդո Պադար Ռինկո» ազգ. պարկը:

ԿՈՄՈՆԵ (Comoé, Komoé), գետ Աֆրիկայում՝ Կոտ դ'Իվուարում (ակունքները՝ Բուրկինա Ֆասոյում): Երկ.՝ 900 *կմ*, ավազանը՝ 74 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 430 *մ*^{3}/*վ*: Թափվում է ***Գվինեական ծոց***: Ավազանի բարձրադիր հատվածում համանուն ազգ. պարկն է:

ԿՈՄՈՐՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ, **Կոմորներ**, Կոմորյան կղզիների միության, պետություն Հնդ. օվկ–ի համանուն կղզիներում՝ Արլ. Աֆրիկայի ափերի մոտ: Տարածքը՝ 2,2 հզ. *կմ*^{2}, բն.՝ 773 հզ. (2010): Մայրաքաղաքը՝ ***Մորոնի***: Պետ. լեզուները՝ կոմորերեն, ֆրանս., արաբ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը՝ նախա–

գահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Կազմված է 4 ինքնավար կղզիներից (փաստացի՝ 3-ից): Բնակչության մեծ մասը սուննի մահմեդական է: Անդամակցում է ՄԱԿ-ին, Աֆրիկ. միությանը ևն: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով մոտ 1 հզ. ԱՄՆ դոլար է (2013): Արտահանում է վանիլ, իլանգ-իլանգ (օծանելիքի բնահյութ), կոպրա ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ, բրինձ ևն: Դրամ. միավորը՝ կոմորյան ֆրանկ:

1883-ին Ֆրանսիան՝ Մոյոտա կղզում, 1886–92-ին մյուս կղզիներում հաստատել է պրոտեկտորատ: Անկախությունը հռչակել է 1975-ին: 2001-ին ընդունել է սահմանադրություն, որով սահմանվել է մեծ ինքնավարություն՝ Կոմորյան կղզիների միություն կազմով:

ԿՈՄՊԼԵՄԵՆՏ (complementum – լրացում), իմուն. սպիտակուցների հավաքակազմ, որը պարունակվում է կենդանիների և մարդու արյան թարմ շիճուկում: Մասնակցում է արյան բակտերիասպան գործողությանը: Կ-ի պատրաստուկներն օգտագործում են հակածին-հակամարմին կոմպլեքսի հայտնաբերման համար, որոշ վարակիչ հիվանդություններ ախտորոշելիս:

ԿՈՄՊԼԵՄԵՆՏԱՐՈՒԹՅՈՒՆ (կենսաքիմ.), 2 մոլ-ների քիմ. կառուցվածքների փոխադարձ համապատասխանություն, որն ապահովում է նրանց փոխազդեցությունը՝ ԴՆԹ-ի 2 թելիկների զույգումը, ֆերմենտի միացումը սուբստրատի, հակագենինը՝ հակամարմնի հետ: Կոմպլեմենտար. կառուցվածքները միմյանց մոտենում են այնպես, ինչպես բանալին՝ կողպեքին:

ԿՈՄՊԼԵՄԵՆՏԱՅՈՒՄ, միևնույն գենի 2 մուտանտ. ձևերի կամ քրոմոսոմների միևնույն հավաքակազմի տարբեր գենների փոխազդեցությունը, որը հանգեցնում է բնականոն ֆենոտիպի ձևավորման:

ԿՈՄՊԼԵՔՍ ԹԻՎ, x + iy տեսքի թիվ, որտեղ x-ը և y-ն իրական թվեր են, իսկ i-ն՝ կեղծ միավոր (թիվ, որի քառակուսին $i^2 = -1$): x-ը կոչվում է Կ. թ-ի իրական մաս, y-ը՝ կեղծ մաս: Իրական թվերը Կ. թ-երի մասնավոր դեպքերն են, երբ y = 0 : x = 0-ի դեպքում Կ. թ. կոչվում է կեղծ թիվ: Յուրաքանչյուր x + iy Կ. թ. երկրաչափորեն կարելի է ներկայացնել որպես հարթության x և y դեկարտյան (ուղղանկյուն) կոօրդինատներ ունեցող կետ: Եթե այդ կետի բևեռ. կոօրդինատները նշանակենք r և φ, ապա համապատասխան Կ. թ. կարելի է ներկայացնել r (Cos φ + isinφ) տեսքով (Կ. թ-ի եռանկյունաչափ. տեսք, որտեղ

$r = \sqrt{x^2 + y^2}$, կոչվում է Կ. թ-ի մոդուլ):

ԿՈՄՊԼԵՔՍ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, կոօրդինացիոն միացություններ, քիմ. միացություններ, որոնց մոլ-ներում կարելի է առանձնացնել կենտր. ատոմը (կոմպլեքսագոյացնող) և նրա հետ անմիջականորեն կապված մոլ-ները կամ իոնները՝ այսպես կոչված լիգանդները: Վերջիններիս քանակը (սովորաբար՝ 4 կամ 6) որոշվում է այսպես կոչված կոօրդինացիոն թվով: Կենտր. ատոմը և լիգանդներն առաջացնում են Կ. մ-ի ներքին ոլորտը: Արտաքին ոլորտը կազմում են իոնները, որոնց լիցքը չեզոքացնում է ներքին ոլորտի լիցքը: Օր.՝ $[Co(NH_3)_6]Cl_3$-ում քառակուսի փակագծերում ատոմների համախումբը՝ ներքին ոլորտն է, Co-ը՝ կենտր. ատոմը, NH_3-ը՝ լիգանդները, Cl իոնները՝ արտաքին ոլորտը: Կ. մ. կարող են լինել ինչպես սինթետիկ, այնպես էլ բնական (հեմոգլոբին, քլորոֆիլ):

ԿՈՄՊԼԵՔՍՈՆՆԵՐ, օրգ. խելատառաջացնող միացություններ, հիմնականում՝ ամինաբազմակարբոնաթթուներ և նրանց ածանցյալները [օր. կոմպլեքսոն II կամ տրիլոն Բ $(NaOOCH_2)_2NCH_2CH_2N(CH_2COONa)_2$]: Կիրառվում են կոմպլեքսոնաչափության մեջ, ջրի փափկացման համար:

ԿՈՄՊՈԶԻՑԻԱ (լատ.՝ compositio – կազմում, շարադրում), 1. գեղ. ստեղծագործության կառուցվածքը, որը պայմանավորված է նրա թեմայով, գաղափարով, նշանակությամբ ևն: Փոքր ծավալի երկերում Կ. ավելի պարզ է, ծավալուն երկերում՝ բարդ: Կառուցվածք. ձևերից են ***այուժեն***, պատումի շարադրանքը (ըստ հեղինակի՝ ականատեսի, գլխ. հերոսի), ***նամականին, օրագրությունը*** ևն:

ԿՈՄՊՈՍՏՆԵՐ (գերմ.՝ Kompost, < լատ. compositus – բաղկացուցիչ), օրգ. պարարտանյութեր, միկրոօրգանիզմների կենսագործունեության արդյունքում զանազան օրգ. նյութերի (գոմաղբ, տորֆ, ֆոսֆորիտային ալյուր ևն) քայքայումից ստացվող պարարտանյութ: Պարունակում են ազոտ, ֆոսֆոր, կալիում, միկրոտարրեր: Արդյունավետությամբ հավասարարժեք են գոմաղբին:

ԿՈՄՍ (գերմ.՝ Graf), պալատ. պաշտոնյա վաղ միջնադարում Արմ. Եվրոպայում: Ավատատիր. մասնատվածության շրջանում Կ. ավատատեր տիրակալ էր, այնուհետև՝ բարձր ազնվական. տիտղոս (ցայսօր ձևականորեն պահպանվում է Եվրոպայի միապետ. երկրներում): Ռուսաստանում Կ-ի («գրաֆ» ձևով) տիտղոսը ներմուծել է ***Պետրոս I***-ը (վերացվել է 1917-ին): Կ. կամ գունդ է կոչվել Կիլիկիայի հայկ. պետությունում Կոռիկոսի կառավարիչը:

«ԿՈՄՍՈՄՈԼԵՑ» («Комсомолец» – «Կոմերիտական»), քաղ., մշակութ., գր., մարզ. երկօրյա թերթ (1932–90, Երևան՝ ռուս.): 1991-ից՝ ***«Էպոխա»***:

«ԿՈՄՍՈՄՈԼՍԿԱՅԱ ՊՐԱՎԴԱ» («Комсомольская правда» – «Կոմերիտական ճշմարտություն»), հաս-քաղ., մշակութ., երիտասարդ. օրաթերթ (1925-ից, Մոսկվա՝ ռուս.): Մինչև 1990-ական թթ-ը՝ ՀամԼԿԵՄ ԿԿ պաշտոնաթերթ: 1992-ից «Կ. պ.»-ի խմբագրության հիմքի վրա ստեղծվել է նույնանուն հրտչ-յուն. լույս է ընծայում «Կ. պ.», նաև մի շարք այլ պարբ-ներ:

ԿՈՄՍՈՄՈՒԹՅՈՒՆ, 1. ավատատիր. ժառանգ. տիրույթ՝ կոմսի գլխավորությամբ: 2. Վտմ՝ Մեծ Բրիտանիայում, Իռլանդիայում և մի շարք անգլիախոս երկրներում: 3. Կիլիկիայի հայկ. պետությունում Կ. էր Կոռիկոսը:

ԿՈՄՈՒՆԱ, (ֆրանս.՝ commune, < լատ. communis – ընդհանուր), 1. միջնադարում Արմ. Եվրոպայում քաղաք. Կ. ավատատերերից ինքնակառավարման իրավունք ձեռք բերած համայնք էր: 2. Ժամանակակից մի շարք պետությունների ամենափոքր վտմ-ի անվանումը:

ԿՈՄՈՒՆԻ Ղևոնդ (Մելքոնյան Ղևոնդ Խաչատուրի, 1909–1953), գրող, խմբ.: 1933-ին՝ Ախտայի (այժմ՝ Հրազդան) «Լենինի դրոշով» շրջ. թերթի խմբ.: Հեղինակ է «Խնդություն» (1932), «Հայրենիք» (1939), «Այգաբաց» (1945) բանաստեղծությունների, «Բանաստեղծություններ և վիպակներ» (1953), «Վիպակներ» (1959) ժող-ների, «Նա փնտրում է զավակին» (1948) վիպակի, «Ախուրյան» (1952) վեպի և այլ գործերի:

ԿՈՄՈՒՆԻԶՄ (լատ.՝ communis – ընդհանուր), տարբեր հայեցակարգերի ընդհ. անվանումը, որոնց հիմքում մասնավոր սեփականության ժխտումն է (նախնադար. Կ., ուտոպիական Կ. ևն): Պատմ. գործընթացի մարքսիստ. հայեցակարգերում՝ հաս-քաղ. կացութաձևը, որը փոխարինելու էր կապիտալիզմին և իր զարգացման ընթացքում անցնելու էր 2 փուլ՝ ցածր, որը կոչվում է ***սոցիալիզմ***, և բարձր՝ Կ.:

ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՊԻԿ (մինչև 1962-ը՝ Ստալինի պիկ, 1998-ից՝ Իսմաիլ Սամանիի պիկ), Պամիրի ամենաբարձր գագաթը (7495 *մ*) Գիտ-յունների ակադ-ի լ-շղթայում՝ Տաջիկստանում: Լանջերին կան հզոր ֆիռնային դաշտեր ու սառցադաշտեր (136 *կմ*²): Կ. պ. առաջինը բարձրացել է խորհրդ. լեռնագնաց Ե. Մ. Աբալակովը:

«ԿՈՄՈՒՆԻՍՏ», շաբաթաթերթ (1918-ին, Մոսկվա, 9 համար): ՌԽՖՍՀ ազգությունների գործերի ժողկոմատին կից Հայկ. գործերի կոմիսարիատի պաշտոնաթերթ: Խմբ.՝ Վահան Տերյան:

«ԿՈՄՈՒՆԻՍՏ», հաս-քաղ. օրաթերթ (1920–89, Բաքու՝ հայ.): Ադրբեջանի կոմկուսի ԿԿ, Ադրբ. ԽՍՀ ԳԽ և ՆԽ պաշտոնաթերթ: Խմբ-ներ՝ Սարգիս Խանոյան, Մեդրակ Վարդանյան, Սերո Սանուցյան, Գեղամ Անտելեպյան, Արտեմ Բաբլումյան, Եղիշե Գրիգորյան, Համո Ամիրխանյան, Տիգրան Գրիգորյան, Հրանտ Բաբայան, Էմիլ Գրիգորյան:

«ԿՈՄՈՒՆԻՍՏ» («Коммунист»), հաս-քաղ., սոցիալ-տնտ., կրթամշակութ. օրաթերթ (1934–90, Երևան՝ ռուս.): ՀԿԿ ԿԿ, ՀԽՍՀ ԳԽ և ՆԽ պաշտոնաթերթ: Խմբ-ներ՝ Ի. Գալկին, Աշիկ Ղազարյան, Ա. Ռիզան, Հրաչյա Գրիգորյան, Սալոմե Արեշյան, Եվգենյա Մելիքովա, Թ. Կատարյան, Գ. Բեյրուտով, Վենիամին Սիրցև, Բորիս Մկրտչյան: 1991-ից՝ ***«Գոլոս Արմենիի»***:

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ, Կոմինտերն, III Ինտերնացիոնալ, միջազգ. կազմ-յուն 1919–43-ին, որը միավորել է տարբեր երկրների կոմ. կուս-յունները: Տեղի է ունեցել Կ. Ի. 7 վեհաժողով, 1-ինը (հիմնադիր)՝ 1919-ի մարտ, 2-րդը՝ 1920-ի հուլիս–օգոստ., 3-րդը՝ 1921-ի հունիս–հուլիս, 4-րդը՝ 1922-ի նոյեմբ–դեկտ., 5-րդը՝ 1924-ի հունիս–հուլիս, 6-րդը՝ 1928-ի հուլիս–սեպտ., 7-րդը՝ 1935-ի հուլիս–օգոստ.: Լուծարվել է 1943-ին:

ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ (1847–1852), 1-ին միջազգ. կոմ. կազմ-յունը: Ստեղծել են Կ. ***Մարքսը*** և Ֆ. ***Էնգելսը*** Լոնդոնում՝ վերակազմավորված «Արդարների միության» հիման վրա: Կոմունիստների համար միության ծրագիր էր «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» (1848): Դադարեցրել է գոյությունը Կ. մ-յան նկատմամբ պրուս. կառ-յան բացած դատավարությունից հետո:

ԿՈՄՈՒՆԻՏԱՐԻԶՄ (լատ.՝ communis – ընդհանուր), **ընդհանրականություն**, սոցիալ. փիլ-յան ուղղություն, որն առաջացել է 1980-ական թթ-ին գլխավորապես ԱՄՆ-ում՝ ազատականության գաղափարախոսության քննադատության արդյունքում: Կ-ի ներկայացուցիչները (Ա. Էտցիոնի, Ու. Գալսթոն և ուր.) քաղաքաց. հաս-յան արդյունավետ մոդել համարել են ընդհ. շահերի, հոգևոր մտերմության, անհատ. կապերի ևն հիման վրա քա-

ղաքացիների միավորումը հաս. ինքնակառավարվող խմբերում:

ԿՈՅԱԲԶԵԶՆԵՐ, **գոմաղբաբզեզներ**, թրթռաբեղիկավորների ընտանիքի բզեզների մի քանի ենթաընտանիք: Երկ.՝ 3 *մմ*–7 *սմ*: Բզեզները և թրթուրները սնվում են հիմնականում կենդանիների աղբով: Հայտնի է մոտ 6000 տեսակ՝ տարածված լայնորեն: Օգտակար են որպես «սանիտարներ» և հողոգոյացնողներ, որոշները հելմինթների միջանկյալ տերեր են: Հին Եգիպտոսում սրբաբզեզներին (սկարաբետներ) պաշտել են:

ԿՈՅԴՈՒԼԱ (Koidula) Լիդիա (Յանզեն, 1843–1886), էստոնացի բանաստեղծուհի, թատերագիր: Էստ. դրամատուրգիայի հիմնադիրը: Հեղինակ է բանաստեղծությունների, որոնցից շատերը դարձել են երգեր, «Սաարեմցի զարմիկը» (1870), «Այդ Մուլքը...» (1872) պիեսների: Հայ. է հրատարակվել «Էստոնիայի երգը» (1964) բանաստեղծությունների ժող–ը:

ԿՈՅԼԱՎ (Coilav), **Կոյլավյան**, ռումինահայ ազնվական գերդաստան XVII–XX դդ–ում: Առավել հայտնի են ***Ժան Կ., Դիոնիսիե Կ., Պայ Մարի Կ., Բոգդան Կ.*** և ուր.:

ԿՈՅԼԱՎ (Կոյլավյան) Գրիգոր (1850–1920), հաս–քաղ. գործիչ, հայագետ, իրավաբան, արվեստագետ: ***Կոյլավ*** հայ ազնվական (XVII–XX դդ.) տոհմից: «Բոտոշանի կուրիեր» թերթի հիմնադիրներից, Բուխարեստի «Էպոկա» (երկուսն էլ՝ ռումհ.) թերթի խմբ.: Հեղինակ է «Հայերը որպես քաղաքների հիմնադիրներ Արևելյան Եվրոպայում» (1909), «Ռումինական երկրների հայերի ավանդությունները, սովորույթները և հավատալիքները» (1911), «Ռումինական երկրների հայկական եկեղեցիները» (1912) աշխ–ների:

ԿՈՅՈՏ, **մարգագետնային գայլ**, շնագիների ընտանիքի գիշատիչ կենդանի: Անվանումը՝ ացտեկյան Coyoti–ից («աստվածային շուն»): Մարմնի երկ.՝ 75–100, պոչինը՝ մոտ 30 ***սմ***: Տարածված է Հս. Ամերիկայում (Ալյասկայից մինչև Պանամա)՝ բաց տարածություններում:

ԿՈՅՍԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, **հոտենդոտ – բուշմենական լեզուներ**, աֆրիկ. լեզվախումբ, հոտենդոտների և բուշմենների (հոտենդոտական, բուշմենական, դամարական) լեզուները՝ տարածված Հվ. Աֆրիկայում:


ԿՈՅՎԻՍՏՈ (Koivisto) Մաունո Հենրիկ (ծ. 1923), ֆինլանդիայի նախագահ՝ 1982–94–ին: Ֆինլանդիայի ս–դ. կուս–յան անդամ՝ 1947–ից: 1968–70 և 1979–81–ին՝ վարչապետ:

ԿՈՅՏՆԵՐ (Käutner) Հելմուտ (1908–1980), գերմանացի կինոռեժ.: Նկարահանել է «Կիտտին և միջազգային գիտաժողովը» (1939), «Սատանայի գեներալը» (1955), «Մնացածը՝ լռություն» (1959), «Պրուսական ամուսնություն» (1974) և այլ ֆիլմեր:

ԿՈՅՐԵ (Koyré) Ալեքսանդր (Կոյրանսկի Ա. Վ., 1892–1964), հրեա փիլ. և գիտ–յան պատմաբան: 1918–ից՝ վտարանդի (Ֆրանսիայում): Աշխ–ները վերաբերում են XVI–XVII դդ–ի ռուս. փիլ–յանը, եվրոպ. խորհրդապաշտությանը և բնագիտ–յանը («Էտյուդներ Գալիլեյի մասին», 1939):


ԿՈՆ Իգոր Սեմյոնովիչ (1928–2011), ռուս սոցիոլոգ: Ժամանակակից ռուս. սոցիոլոգիայի հիմնադիրներից: ՌԿԱ ակադ. (1989): Աշխ–ները վերաբերում են սոցիոլոգիայի պատմությանը և սոցիալ. փիլ–յանը, անձի տեսությանը, սոցիալ. և տարիք. հոգեբ–յանը, գենդեր. խնդիրներին և ն/ն («Սեռային տարբերությունների հոգեբանություն», 1981, «Հայրությունը որպես սոցիոմշակութային երևույթ», 2005, ն/ն):

ԿՈՆ (հուն.՝ conus), 1. (երկրչփ.) մարմին, որն առաջանում է ուղղանկյուն եռանկյունն իր էջերից մեկի շուրջը պտտելով: Կ–ի ծավալը՝ $V = 1/3\pi r^2 h$, կողմնային մակերևույթի մակերեսը՝ πrl: 2. (Մաթ.) մակերևույթ, որը կազմված է մի կետից (Կ–ի գագաթ) դուրս եկող կիսաուղիղների բազմությունից և Կ–ի գագաթը չպարունակող հարթությունից: Կ–ի կողմնային մակերևույթը ***կոնական մակերևույթի*** մաս է:



ԿՈՆ, մերկասերմ բույսերի բազմացման օրգան, ***սպրորֆիլների*** ամրող ջություն է: Կ–ի երկարացած առանցքի վրա պարուրաձև տեղակայված են սպորոֆիլները՝ սովորաբար թեփուկների ձևով, որոնց ծոցերում զարգանում են սերմերը: Իգական Կ–երը փայտանում են: Երբեմն «Կ.» եզրույթն օգտագործում են որպես ստրոբիլի հոմանիշ:

ԿՈՆԱԿԱՆ ՀԱՏՈՒԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, կորեր, որոնք ստացվում են ուղիղ շրջ. ***կոնը*** (տես ***Կոնական մակերևույթ***) իր գագաթով չանցնող հարթություններով հատելիս: Կախված կոնի և հատող հարթության փոխադարձ դիրքից՝ ստացվում է 2–րդ կարգի հանրահաշվ. 3 կորերից մեկը. 1. **էլիպս** (հարթությունը հատում է կոնի մի խոռոչի բոլոր ծնիչները, նկ. ա.), 2. **պարաբոլ** (հատող հարթությունը զուգահեռ է կոնի որևէ շոշափող հարթության, նկ. բ.), 3. **հիպերբոլ** (հարթությունը հատում է կոնի 2 խոռոչը, նկ. գ.):



ԿՈՆԱԿԱՆ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹ, տարածության որևէ կորի (**ուղղորդ**) բոլոր կետերը տրված կետի (**Կ. մ–ի գագաթ**) հետ միացնող ուղիղների (**ծնիչներ**) երկրչփ. տեղ: Եթե ուղղորդը շրջանագիծ է, իսկ Կ. մ–ի գագաթն այդ շրջանագծի հարթության կենտրոնով անցնող ուղղահայացի (**Կ. մ–ի առանցք**) վրա է, ապա Կ. մ. կոչվում է շրջանային կոն. այն կազմված է նրա գագաթում իրար միացող 2 խոռոչից:

ԿՈՆԱԿՐԻ (Conakry), Գվինեայի մայրաքաղաքը (1958–ից), նվինգստ Ատլանտ. օվկ–ի ափին՝ Տոմբո կղզու վրա (հողաթմբով միացած է Կալում թ–կղզուն): Բն.՝ 2,1 մլն (2012): Ունի միջազգ. օդանավակայան: Կան սննդահամի, քիմ., տեքստիլ, փայտամշակման և այլ ձեռն–ներ: Հիմնադրվել է 1884–ին: XIX դ.–1958–ին՝ Գվինեայի ֆրանս. գաղութի վարչ. կենտրոնը:

ԿՈՆԳԼՈՄԵՐԱՏ (լատ.՝ conglomeratus – կուտակված), 1. նստվածք. ապար, ցեմենտված կոպիճ: Կազմված է սովորաբար ավազից, խճաքարից և գլաքարից: 2. Ժամանակակից տնտ. միավորում: Ստեղծվել է 1960–ական թթ–ին (գլխավորապես՝ ԱՄՆ–ում): Կ. ձևավորվում է գործառն. կամ ներդրումային միաձուլման ուղիով:

ԿՈՆԳՈ (ինքնանվանումը՝ մունկոնգո, բակոնգո), բանտու խմբի ժողդ Կոնգոյի ԺՀ–ում, Կոնգոյի Հանրապետությունում, Անգոլայում: Տարբերում են բուն Կ. (1,8 մլն), Կ. սան–սալվադոր (700 հզ.), յոմբե (850 հզ.), սունդի (460 հզ.), բեմբե (420 հզ.), լարի (120 հզ.), կունյի (100 հզ.): Լեզուն՝ կոնգո: Հիմնականում քրիստոնյա են, կան նաև ավանդ. հավատալիքների հետևորդներ, սուննի մահմեդականներ ևն:

ԿՈՆԳՈ (Congo), **Զաիր**, գետ Կենտր. Աֆրիկայում, հիմնականում՝ Կոնգոյի ԺՀ–ում: Երկ.՝ 4320 *կմ* (Լուբա գետի հունից), ավազանը՝ 3,7 մլն *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 46 հզ. *մ³/վ*: Թափվում է Ատլանտ. օվկ.: Ջրառատությամբ և ավազանի չափերով 1–ինն է Աֆրիկայում, 2–րդը՝ աշխարհում (Ամազոնից հետո): Առավել խոշոր վտակներն են Լուֆիրան, Լուվուան, Լուկուգան, Արուվիմին: Մեծ մասը նավարկելի է: Գլխ. նվինգստ–ներն են Բուկաման, Կոնգոլոն, Կինշասան, Կաբալոն ևն:

ԿՈՆԳՈ, պետ. կազմավորում Կոնգո գետի ստորին ավազանում (ժամանակակից Անգոլայի և Կոնգոյի ԺՀ տարածքում) XIII–XIX դդ–ում: Վերելք է ապրել XV դ–ի կես–XVI դ–ում: Պորտուգալացիների ներթափանցումով (1480–ական թթ.) Կ. դարձել է ստրկավաճառության կարևոր շրջան: XIX դ–ի վերջին Կ–ի տարածքի մեծ մասը մտել է պորտուգ. Անգոլայի կազմի մեջ:

ԿՈՆԳՈ, **Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետություն** (1971–97–ին՝ Զաիր), պետություն Կենտր. Աֆրիկայում՝ համանուն գետի ավազանում: Սահմանակից է Կենտրոնաաֆրիկ. Հանրապետությանը, Սուդանին, Ուգանդային, Ռուանդային, Բուրունդիին, Տանզանիային, Զամբիային, Անգոլային և Կոնգոյի Հանրապետությանը: Տարածքը՝ 2,345 մլն *կմ²*, բն.՝ 77,4 մլն (2014): Մայրաքաղաքը՝ Կինշասա: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը: Պետ. լեզուները՝ ֆրանս. և կոնգո: Հավատացյալները հիմնականում քրիստոնյա են (75 %), տեղ. հավատալիքների հետևորդներ (15 %), մահմեդականներ (10 %): Բաժանված է 11 վարչ. նահանգ–ների: Անդամակցում է ՄՄԿ–ին, Աֆրիկ. միությանը, ԱՏՀԿ–ին ևն: Արտահանում է պղինձ, ալմաստ, կոբալտ, ուրան, սուրճ, բամբակ, արմավի յուղ, ներմուծում սննդամթերք, նավթ, գործվածք: Աշխարհի ամենաաղքատ երկրներից է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 216 ԱՄՆ դոլար է (2013): Դրամ. միավորը՝ կոնգոլեզյան ֆրանկ:

1885–1908–ին եղել է Բելգիայի թագավոր Լեոպարդ II–ի տիրույթը («Կոնգոյի անկախ պետություն»), 1908–60–ին՝ Բելգիայի գաղութը (Բելգ. Կ.), 1964–71 և 1973–ից՝ Կ–ի ԺՀ: Առաջին ազգ. պետությունը ղեկավարել է Պ. Լումումբան (սպանվել է 1961–ին): 1965–ին իշխանության գլուխ է անցել Մոբուտու Սեսե Սեկոն: 1994–ին ձևավորվել է բարձրագույն օրենսդիր մարմինը, ընդունվել է ժամանակավոր սահմանադրություն: 1997–ին՝ 1–ին կոնգոլեզյան պատերազմի (1996–97) ժամանակ Մոբուտուն տապալվել է: Ներքին սուր հակասությունների պատճառով ծագել է 2–րդ կոնգոլեզյան պատերազմը (1998–2002), որին ներքաշվել են մի շարք աֆրիկ. երկրներ (զոհվել է շուրջ 4 մլն մարդ): 2004–ին ներդրվել է բազմակուս. համակարգ, 2006–ին ընդունվել է նոր սահմանադրություն:

ԿՈՆԳՈ, **Կոնգոյի Հանրապետություն**, պետություն Կենտր. Աֆրիկայում՝ հասմանուն գետի ստորին հոսանքում: Սահմանակից է Գաբոնին, Կամերունին, Կենտրոնաաֆրիկ. Հանրապետությանը, Կոնգոյի ԺՀ–ին: Տարածքը՝ 342 հգ. *կմ*^{2}, բն.՝ 4,2 մլն (2012): Մայրաքաղաքը՝ *Բրազավիլ*: Պետ. լեզուն՝ ֆրանս.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը: Հավատացյալները տեղ. հավատալիքների հետևորդ են (47 %), քրիստոնյաներ (45 %), մահմեդականներ (3 %): Բաժանված է 10 վարչ. մարզերի: Անդամակցում է ՄԱԿ–ին, ԱՀԿ–ին, Աֆրիկ. միությանը, Առևտրի և սակացուցակների գլխ. համաձայնագրին, ԱոտՀԿ–ին: Զարգացող պետություն է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 1369 ԱՄՆ դոլար է (2005): Արտահանում է նավթ, փայտանյութ, ալմաստ, կակաո, արմավի յուղ, ծխախոտ, բանան, ներմուծում մեքենաներ ու սարքավորումներ, քիմիկատներ, դեղամիջոցներ, տրանսպորտ. միջոցներ, չուգուն, պողպատ, հացահատիկ: Դրամ. միավորը՝ աֆրիկ. ֆրանկ:

XIII դ–ում Կ–ի տարածքում եղել է Տեկե, Լուանգո և Կոնգո պետ. միավորումը, որը 1870–80–ական թթ–ին գրավել են ֆրանսիացիները: 1903–ին գաղութը կոչվել է Միջին Կ.: 1958–ին հռչակվել է ինքնավար հանրապետություն, 1960–ին՝ անկախ Կ–ի Հանրապետություն (1969–ից՝ Կ–ի Ժող. Հանրապետություն), 1991–ին՝ դարձյալ Կ–ի Հանրապետություն: Համաժող. որոշումով սահմանվել է միակուս. համակարգից բազմակուսակցականի անցման շրջան: 2002–ին ընդունել են նոր սահմանադրություն:

ԿՈՆԳՈ, **բակոնգո**, ***կոնգո*** ժողգ–ի լեզուն: Կոնգոյի ԺՀ պետ. լեզուներից: Պատկանում է բենուե–կոնգոլեզյան լեզուների խմբին: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ԿՈՆԳՐԵՍ (լատ.՝ congressus – հանդիպում, ժողով), 1. պետությունների, տարածքների, կազմ–յունների ղեկ–ների կամ ներկայացուցիչների հանդիպում, հավաք, ինչպես նաև միջազգ. համաժողովի տեսակ՝ խաղաղության կողմնակիցների միջազգ. Կ., գիտ. Կ. ևն: 2. Օրենսդր. մարմնի կամ նրա պալատներից մեկի անվանումը որոշ երկրներում (Բոլիվիա, Բրազիլիա, Վենեսուելա, Կոլումբիա ևն): 3. Ազգ. որոշ կազմ–յունների անվանումը մի շարք երկրներում (օր.՝ Հնդկաստանում՝ Հնդ. ազգ. կոնգրես կուս–յունը):

ԿՈՆԳՐԵՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ, ԱՄՆ–ի ազգ. գրադարանը, աշխարհի խոշորագույն գրադարաններից է: Հիմնադրվել է 1800–ին Վաշինգտոնում: Ունի 140 մլն պահպանվող միավոր:

ԿՈՆԳՈՒՐ, Կաշգարյան լ–շղթայի լ–զանգված Չինաստանի արմ–ում: Բարձր.՝ մինչև 7719 *մ*: Կան սառցադաշտեր:

ԿՈՆԴԱԿ (հուն.՝ kontákion), գլանաձև ձող, գավազան, փաթեթ, նաև հոգևոր օրհներգ, տաղ, մաղթանք: 1. Վաղբյուզ. հոգևոր պոեզիայի և երգասացության ժանր, հիմն–պոեմ: Ծաղկում է ապրել VI դ–ում, VIII–IX դդ–ում ***կանոնի*** ներմուծմամբ դուրս է մղվել: 2. Ուշ շրջանի ուղղափառ եկեղեցիների ժամերգության մեջ օգտագործվել է որպես կարճ երգասացություն: Հայ մատենագրության մեջ և եկեղեց. կիրառություններում նշանակում է կաթողիկոս. (երբեմն՝ նաև առաջնորդ եպս–ի) թուղթ, նամակ, ուղերձ, շրջաբերական կտակ: Այսօր էլ Կ–ին գլանաձև փաթույթի տեսք են տալիս, ճակատը զարդարում կաթողիկոս–եպիսկոպոս. խորհրդանիշներով, մանրանկարներով: Կ–ները նաև Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվելու, եկեղեցականներին բարձր պաշտոնների նշանակելու ևնի մասին են: Երբեմն նաև կարևոր պատմ. սկզբնաղբյուրներ են:

ԿՈՆԴԱԿՈՎ Իվան Լավրենտևիչ (1857–1931), ռուս քիմիկոս–օրգանիկ: Բացահայտել է (1893) հալոգենանիդրիդների միացման ռեակցիան ալկեններին: Հայտնագործել է (1899) երկմեթիլբուտադիենի կատալիտիկ պոլիմերմամբ սինթետիկ կաուչուկանման նյութի ստացումը:

ԿՈՆԴԱԿՈՎԱ Ելենա Վլադիմիրովնա (ծ. 1957), ռուս տիեզերագնաց օդաչու: ՌԴ հերոս (1995): Վ. Վ. ***Ռյումինի*** կինը: Կատարել է 2 տիեզ. թռիչքներ (1994–95, 1997): Թռիչքների գումար. ժամանակը՝ 178 օր 10 *ժ* 40 *ր*:

ԿՈՆԴԵ (Condé) Լուի II Բուրբոն (1621–1686), Ֆրանսիայի արքայազն, զորավար: Երեսնամյա պատերազմի (1618–48) շրջանում նրա տարած հաղթանակները նպաստել են 1648–ի Վեստֆալյան հաշտության կնքմանը: Ֆրոնդայի ակտիվ գործիչներից էր:

ԿՈՆԴԵՆՍԱՏՈՐ (լատ.՝ condensare – խտացնել, կուտակել), 1. (էլ.) 2 կամ ավելի շարժ. կամ անշարժ շրջադիրներից կազմված, դիէլեկտրիկով (թուղթ, խեցի, էլեկտրոլիտ, օդ ևն) իրարից բաժանված համակարգ (դիէլեկտրիկի հաստությունը շրջադիրների չափերի համեմատությամբ փոքր է): Ունի էլ. լիցքեր կուտակելու հատկություն: Կիրառվում է թույլ հոսանքի և ուժային էլ. շղթաներում՝ որպես կենտրոնացված էլ. ունակություն: 2. (Ջերմատեխ.) **խտարար**, նյութի գազ. (գոլորշի) վիճակից հեղուկի կամ բյուրեղ. վիճակի անցումն իրականացնող սարք:

ԿՈՆԴԵՆՍԱՑՄԱՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ, 2 կամ ավելի միացություններից ավելի բարդերի առաջացման ռեակցիաների պատմականորեն ձևավորված անվանումն օրգ. քիմիայում: Կ. ռ. տարբերվում են ինչպես ըստ փոխազդող նյութերի բնույթի, այնպես էլ ըստ քիմ. փոխարկումների էության, ներառում են C–C նոր կապերի առաջացման ներմոլ. և միջմոլ. շարժընթացներ, որոնք ուղեկցվում են անօրգ. (տես ***Պոլիկոնդենսում***) կամ օրգ. մոլ–ի անջատմամբ: Այս տեսակի Կ. ռ. են կրոտոն. կոնդենսացումը, ***Կլայզենի կոնդենսացումը, Կնևենագելի ռեակցիան, Պերկինի ռեակցիան, Վյուրցի ռեակցիան,*** Ֆրիդել–Քրաֆթսի ռեակցիան, ***ալդոլային կոնդենսումը, բենզոինային կոնդենսացումը, դիենային սինթեզը, տարացիկլային միացությունների*** առաջացման բոլոր ռեակցիաները:

ԿՈՆԴԵՆՍԱՑՎԱԾ ՎԻՃԱԿ, նյութերի հեղուկ և պինդ ագրեգատ. վիճակներ: Նյութի գազ. (գոլորշի) վիճակից կոնդենսացված վիճակի անցումը կոչվում է կոնդենսացում:

ԿՈՆԴԻԼՅԱԿ (Condillac) Էթիեն Բոննո դը (1715–1780), ֆրանսիացի փիլ.: Գ. Բ. դե ***Մաբլիի*** եղբայրը: Զարգացրել է իմացության սենսուալիստ. տեսությունը, ըստ որի՝ զգայությունները գիտելիքի միակ աղբյուրն են: Ասոցիատիվ հոգեբ–յան հիմնադիրներից է: Հեղինակ է «Տրակտատ զգայությունների մասին» (1754) աշխ–յան:

ԿՈՆԴՈՐ, **պասկուճ**, ամերիկ. անգղնեբի ենթակարգի գիշատիչ թռչուն: Երկ.՝ ավելի քան 1, թևերի բացվածքը՝ մինչև 3 *մ* (ժամանակակից գիշատիչ թռչուններից ամենախոշորն է): Գլուխը և պարանոցը մերկ են: Ապրում է Անդերի ալպ. գոտում և Հվ. Ամերիկայի Խաղաղօվկիանոս. ափերին: Անհետացման եզրին է կալիֆոռնիական Կ. կամ անգղը. գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում: 2012–ին թվաքանակը 405 էր, որից 225–ը ապրում են վայրի բնության մեջ:

ԿՈՆԴՈՐ (իսպ.՝ condor), իսպ. ոսկե և արծաթե դրամ, որը շրջանառվել է Հվ. Ամերիկայի մի շարք երկրներում (Չիլի, Կոլումբիա, Էկվադոր) մինչև ոսկե չափորոշիչի փոփոխումը՝ 1930–ական թթ–ին: Առաջինը 1851–ին թողարկվել է Չիլիում:

ԿՈՆԴՈՐՍԵ (Condorcet) Մարի Ժան Անտուան Նիկոլա դը (1743–1794), մարքիզ, ֆրանսիացի փիլ–լուսավորիչ, մաթեմատիկոս, սոցիոլոգ և քաղ. գործիչ: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1776–92): 1785–ից՝ Ֆրանսիայի ակադ–ի քարտուղար, համագործակցել է Դ. Դիդրոյի և Դ'Ալամբերի հետ «Հանրագիտարան»–ն ստեղծելիս: Կոնվենտում հարել է ժիրոնդիստներին: Կ. դեիզմի և սենսուալիզմի կողմնակից էր: Պատմության զարգացումը բացատրել է մարդկային բանականության անսահման հնարավորությամբ:

ԿՈՆԴՐԱՇԻՆ Կիրիլ Պետրովիչ (1914–1981), ռուս. դիրիժոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1972): 1943–56–ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի դիրիժոր, 1960–75–ին՝ ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխ. դիրիժոր: Նվագացանկում՝ Դ. Դ. Շոստակովիչի, Ա. Խաչատրյանի, Գ. Վ. Սվիրիդովի և ուր. երկեր: Հեղինակ է «Դիրիժորական արվեստի մասին» (1970) գրքի: 1984–ից Ամստերդամում անցկացվում է երիտասարդ դիրիժորների Կ–ի անվ. միջազգ. մրցույթ: ԽՍՀՄ (1948, 1949), ՌԽՖՍՀ (1969) Պետ. մրց–ներ:

ԿՈՆԴՐԱՏԵՆԿՈ Ռոման Իսիդորովիչ (1857–1904), ռուս. բանակի զորահրամ., գեն–լեյտ. (1904): 1904–05–ի ռուս–ճապոն. պատերազմի ժամանակ՝ դիվիզիայի պետ: Ղեկավարել է Պորտ Արտուրի ցամաք. պաշտպ–յունը: Կ–ի ղեկավարությամբ ստեղծվել և կիրառվել են սպառազինության նոր միջոցներ: Զոհվել է մարտում:

ԿՈՆԴՐԱՏԵՎ Գեորգի Գրիգորևիչ (ծ. 1944), ռուս գեն–գնդ. (1992): 1986–ից՝ բանակների հրամ. (մինչև 1987–ը՝ 40–րդի՝ Աֆղանստանում): 1989–ից՝ Թուրքեստանյան ռազմ. օկրուգի զորքերի հրամ–ի տեղակալ, 1991–ից՝ զորքերի հրամ.: 1992–95–ին՝ ՌԴ պաշտպ–յան նախարարի տեղակալ:

ԿՈՆԴՐԱՏԵՎ Կիրիլ Յակովլևիչ (1920–2006), ռուս երկրաֆիզիկոս: ՌԴԱ ակադ. (1991, ԽՍՀՄ ԳԱ ակադ.՝ 1984–ից): ՌԴ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1992): Աշխ–ները վերաբերում են մթն–ի ֆիզիկայի, արբանյակ. օդերևութաբանության, մթն. օպտիկայի ակտինոմետրիայի և այլ հարցերի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1983):

ԿՈՆԴՐԱՏԵՎ Նիկոլայ Դմիտրևիչ (1892–1938), ռուս տնտեսագետ: Կոնյունկտուրայի մեծ ցիկլերի («Կոնդրատևի ցիկլեր») տեսության հիմնադիրը: Տեսականորեն

հիմնավորել է «Նոր տնտեսական քաղաքականությունը» ԽՍՀՄ-ում: Անհիմն բռնադատվել է 1930-ին, գնդակահարվել, արդարացվել է 1987-ին:

ԿՈՆԴՐԱՏԵՎ, Վիկտոր Նիկոլաևիչ (1902–1979), ռուս ֆիզքիմիկոս: Մ. Վ. ***Կոնդրատևայի*** հայրը: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1953): Աշխ-ները վերաբերում են քիմ. կինետիկային, մոլ. սպեկտրաչափությանը, նյութի կառույցին, լուսաքիմիայի հարցերին:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1946):

ԿՈՆԴՐԱՏԵՎ, Վյաչեսլավ Լեոնիդովիչ (1920–1993), ռուս գրող: «Սաշկա» (1979, համանուն ժող.՝ 1981, կինոնկար՝ 1981), «Ինչ է եղել...» (1980) վիպակներում Կ. ներկայացրել է անհատի բարոյահոգեբ. խնդիրները պատերազմի ժամանակ: Հեղինակ է նաև «Հանդիպումներ Սրետենկայում» (1983), «Հիշողության և ճշմարտության տաք հետքերով» (1987), «Մեկ կյանք: Ծեր ինժեների գրառումները» (1990), «Դատապարտվածի գրառումները» (1993), «Մահափորձ» (1994), «Ողջույն ռազմաճակատից» (2005) վիպակների, «Կարմիր դարպասներ» (1988) վեպի, որտեղ կասկածի տակ է առել խորհրդ. պատմագիտ-յան կանխադրույթները: Ինքնասպան է եղել:

ԿՈՆԴՐԱՏԵՎԱ, Ելենա Նիկոլաևնա (1925–1995), մանրէաբան: ՌԳԱ ակադ. (1992): Աշխ-ները վերաբերում են միկրոօրգանիզմների (հիմնականում՝ լուսասինթեզող բակտերիաների) ֆիզիոլոգիային և կենսաքիմիային: ԽՍՀՄ Պետ. մրց. (1988):

ԿՈՆԴՐԱՏԵՎԱ, Լյուդմիլա Անդրեևնա (ծ. 1958), ռուս մարզուհի (աթլետիկա): ԽՍՀՄ ս. վ. վ. (1978): Օլիմպ. խաղերի (1980)՝ 100 *մ* վազքի, Եվրոպայի (1978)՝ 200 *մ* վազքի և 4 անգամ 100 *մ* փոխանցավազքի, ԽՍՀՄ (1979, 1982, 1988)՝ 100 և 200 *մ* վազքի և 4 անգամ 100 *մ* փոխանցավազքի չեմպիոնուհի:

ԿՈՆԴՐԱՏԵՎԱ, Մարինա Վիկտորովնա (ծ. 1934), բալետի ռուս արտիստուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1976): Վ. Ն. ***Կոնդրատևի*** դուստրը: 1952–80-ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մենապարուհի (*Ժիզել՝* Ա. Ադանի «Ժիզել», *Կատերինա՝* Ս. Ս. Պրոկոֆևի «Քարե ծաղիկը», ևն), 1980-ից՝ մանկավարժ-փորձավար, 1988-ից՝ բալետմայստեր: Երիտասարդ ուսանողների համաշխ. փառատոնի 1-ին մրց. (1955):

ԿՈՆԴՈՒԿՏԱՉԱՓՈԽԹՅՈՒՆ (անգլ.՝ conductivity – էլեկտրահաղորդականություն), վերլուծության էլեկտրաքիմ. եղանակ. հիմնված է լուծույթների էլեկտրահաղորդականության չափման վրա: Կիրառվում է աղերի, թթուների, հիմքերի լուծույթների կոնցենտրացիաները որոշելու, որոշ արդ. լուծույթների բաղադրությունն ստուգելու համար: Տես նաև ***Վերլուծության էլեկտրաքիմիական եղանակներ***:

ԿՈՆԵՄԿԻ (Koneski) Բլաժե (1921–1993), մակեդոնացի գրող, բանասեր: Հեղինակ է «Կամուրջ» (1945) պոեմի, «Ասեղնագործուհին» (1955), «Գետեր» (1968), «Գրառումներ» (1974) բանաստեղծությունների ժող-ների, պատմվածքների, պատմությանը, գրկ-յանը վերաբերող աշխ-ների, նաև «Մակեդոներեն գրական լեզվի քերականություն» (1952–54) մակեդոն-ի առաջին գիտ. աշխ-յան:

ԿՈՆԵՎ, Իվան Ստեպանովիչ (1897–1973), խորհրդ. ռազմ. գործիչ, զորավար: ԽՄ մարշալ (1944): ԽՄ հերոս (1944, 1945): Ռուսաստանում քաղաքաց. պատերազմի տարիներին (1917–22)՝ բրիգադի, դիվիզիայի, բանակի շտաբի կոմիսար: ՀՄՊ-ի ժամանակ՝ բանակի (19-րդ), Արմ., Կալինինյան, Հս-արմ., Տափաստանային, 1-ին և 2-րդ ուկր. ռազմաճակատների հրամ.: 1946–50, 1955–56-ին՝ Յամաք. զորքերի, 1956–60-ին՝ Վարշավայի պայմանագրի երկրների միացյալ ԶՈՒ գլխ. հրամ., 1961–62-ին՝ Գերմանիայում խորհրդ. զորախմբերի հրամ.:

ԿՈՆԵՐ, առաջնախոհիկավորների ենթադասի ծով. փափկամարմինների ընտանիք: Հայտնի է ավելի քան 500 տեսակ՝ արևադարձներում և մերձարևադարձներում: Գիշատիչ են: Ունեն թունավոր գեղձեր: Խայթոցը շատ ցավոտ է (հայտնի են մահացու դեպքեր): Խեցին օգտագործվում է որպես զարդ:

ԿՈՆԵՅԿԻ Վիկտոր Վիկտորովիչ (1929–2002), ռուս գրող, կինոսցենարիստ: Հեղինակ է «Եթե կանչի ընկերը», «Վաղվա հոգսեր» (երկուսն էլ՝ 1961), «Ծովային երազներ» (1972), «Երրորդն ավելորդ է» (1982) և այլ վիպակների, նաև պատմվածքների ժող-ների, «Բարի հույսի համար» (1977) վեպի, կինոսցենարների, «Ինչ-որ ձևով դրամա» (1989), ճամփորդ. նոթերի և նամակների ժող-ի, «Թանաքաբծեր հին ծծանի վրա» (1997) ինքնակենսագր. երկի: Կ-ի ստեղծագործությունների հիման վրա ստեղծվել են կինոնկարներ:

«ԿՈՆ-ԹԻԿԻ», բալզամածառերի կոճղերից, հին պերուական լաստանավերի օրինակով Թուր Հեյերդալի պատրաստած լաստանավը (մակերեսը՝ մոտ 100 *մ*^{2}): Դրանով նա 1947-ին 5 ուղեկիցների հետ ք. Կալյաոից (Պերու) անցել է մինչև Թուամոտո կղզեխմբի Ռարորիա կղզին (մոտ 8 հզ. *կմ* 101 օրում), որով ապացուցել է Պոլինեզիան Արևելքից եկածներով բնակեցվելու հնարավորությունը: Պահվում է Օսլոյի թանգարանում:

ԿՈՆԻԱ, ք. Թուրքիայում՝ Անատոլիայի կենտրոնում, համանուն իլի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,3 մլն (2014): Գործում են թեթև, սննդի, շինանյութերի արդ-յան և այլ ձեռն-ներ: Կան միջնադար. մահմեդ. ճարտ. հուշարձաններ:

ԿՈՆԻԲԵՐ, **Կոնիբիր** (Conybeare), Ֆրեդերիկ Կոնվալիս (1857–1924), անգլիացի բանասեր, հայագետ: Բրիտ. ակադ-ի (1903), ՎատՄՄ անդամ: Էջմիածնում ուսումնասիրել է մտնդ-ի գանձերը, համեմատել Արիստոտելի և Պորփյուրի հայ. թարգմ-ների ձեռագրերը հուն. բնագրերի հետ, ճշտել Պլատոնի գործերի հայ. թարգմ-յան ժամանակը, հայ. ձեռագրերի հիման վրա ճշգրտումներ արել Փիլոնի հուն. տեքստերում, հրատարակել է նրա «Յաղագս վարուց կենաց տեսականի» (1895) երկը: Հայ. լույս են տեսել Կ-ի «Համեմատութիւն Դաւիթ Անյաղթի գրեանց յունարէն բնագրի հետ», «Քննութիւնք գրոց Դաւթի Անյաղթի կամ Թարգմանութեանց Արիստոտէլի» (երկուսն էլ՝ 1893), «Մովսէս Խորենացւոյ պատմութեան աղբերաց խնդիրը» («ՀԱ», 1902), «Մովսէս Խորենացւոյ պատմութեան ժամանակը» («ՀԱ», 1903) աշխ-ները: Հեղինակ է նաև «Հայաստանը և հայերը» (1889) հոդվածի: Կազմել է «Բրիտանական թանգարանի հայկական ձեռագրերի գրացուցակը» (անգլ., 1913), «Բոդլեյան գրադարանի հայկական ձեռագրերի գրացուցակը» (համահեղ.՝ Ս. Պարոնյան, հայ., անգլ., 1918):

ԿՈՆԻԻՆ, ալկալոիդ, պարունակվում է գինազոխում և մի շարք բույսերում: Ուժեղ թույն է: Հնում հյութն օգտագործվել է որպես մահապատժի միջոց:

ԿՈՆԿԻՍՏԱԴՈՐՆԵՐ (իսպ.՝ եզ. թվով՝ conquistador – նվաճող), իսպանացի արկածախնդիրներ, որոնք ուղևորվել էին Ամերիկա՝ նոր տարածքներ նվաճելու նպատակով: Կ-ի (Ֆ. Պիսառո, Է. Կորտես և ուր.) արշավանքներն ուղեկցվել են բնիկների ոչնչացմամբ և ստրկացմամբ:

ԿՈՆԿԼԱՎ (լատ.՝ conclave – կողպված սենյակ), կարդինալների հավաք՝ 1274-ից, որը գումարվում է Հռոմի պապի մահվանից 10 օր անց՝ նոր պապ ընտրելու համար: Տեղի է ունենում արտաքին աշխարհից մեկուսացած՝ փակ սենյակում:

«ԿՈՆԿՈՐԴ», գերձայն. մարդատար (մինչև 150 տեղ) ինքնաթիռ՝ ԲՍԿ (Մեծ Բրիտանիա) և Ազրոսպասյալ (Ֆրանսիա) ֆիրմաների: Առաջին թռիչքը կատարվել է 1969-ին, վերջինը՝ 26.11.2003-ին:

ԿՈՆԿՈՐԴԱՏ (լատ.՝ concordatum – համաձայնություն), համաձայնագիր Հռոմի պապի և որևէ պետության միջև, որով կանոնակարգվում է կաթոլիկ եկեղեցու կարգավիճակը տվյալ երկրում:

ԿՈՆԿՈՐԴԻԱ, ք. Արգենտինայի արլ-ում, նվինգստ Ուրուգվայ գետի աջ ափին: Բն.՝ 157 հզ. (2010):

ԿՈՆԿՐԵՏԸ ԵՎ ՎԵՐԱՑԱԿԱՆԸ, փիլ. կատեգորիաներ. **կոնկրետը** ամբողջ. առարկան է՝ իր ողջ հարստությամբ, իր բոլոր կողմերով, կապերով ու հարաբերություններով, որոնք ստեղծվում են առարկայի գոյության որոշակի պայմաններում, **վերացականը**՝ առարկան, այդ որոշակի պայմաններից դուրս՝ որպես ձև, սխեմա, հնարավորություն:

ԿՈՆՀԱՅՄ (Cohnheim) Յուլիուս Ֆրիդրիխ (1839–1884), գերմանացի ախտաբան: Առաջարկել է այսպես կոչված ուռուցքների առաջացման սաղմնային տեսությունը: Աշխ-ները վերաբերում են տուբերկուլոզի, էմբոլիայի, ինֆարկտի ախտածնությանը, բորբոքման վերաբերյալ տեսությանը:

ԿՈՆՅՈՆԿՈՎ, Սերգեյ Տիմոֆեևիչ (1874–1971), ռուս քանդ.: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1958): ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի ակադ. (1954): Սոց. աշխ. հերոս (1964): Հեղինակ է ընդհանրացված-խորհրդանշ. կերպարների («Մտրիբոզ», 1910, ևն), հոգեբ. դիմաքանդակների («Ինքնադիմաքանդակ», 1954, ևն), մոնումենտալ կոմպոզիցիաների («Ժողովուրդների խաղաղության և եղբայրության համար պայքարում ընկածներին», 1918, հուշատախտակ-հարթաքանդակ, «Ազատագրված մարդը», 1947): ԽՍՀՄ Պետ. (1951), Լենինյան (1957) մրց-ներ:

ԿՈՆՅՈՎԻՉ (Konjović) Պետար (1883–1970), սերբ կոմպոզիտոր, երաժշտագետ, բանահավաք: Չեխիայի (1938), Սերբիայի (1946) գիտ-յան և արվ-ների ակադ-ների անդամ: Բելգրադի երաժշտ. ակադ-ի ռեկտոր (1939–43, 1945–47): Սերբ. կոմպոզիտոր. դպրոցի հիմնադիրներից: Հեղինակ է օպերաների («Կոշտանա», 1931), «Մակար Չուդրա» (1945) սիմֆ. պոեմի, կամեր-գործիք. անսամբլների, խմբերգերի, ռոմանսների, երգերի, ժող. երգերի մշակումների: Աշխ-ները վերաբերում են սերբ. և սլովեն. երաժշտությանը:

ԿՈՆՅՈՒԳԱՏՆԵՐ, շղթայակցիչներ, կառնաչ ջրիմուռների դաս, որոնց բնորոշ է *կոնյուգացում* սեռ. գործողությունը: Ավելի քան 50 ցեղի և 6 հզ. տեսակի Կ. ապրում են անուշահամ ջրերում, որտեղ հաճախ առաջացնում են տիղմ:

ԿՈՆՅՈՒԳԱՑՈՒՄ (լատ.՝ conjugatio – միաձուլում), **հարակցում**, 1. սեռ. կենսընթացի ձև. հատուկ է որոշ կառնաչ ջրիմուռների (օր.՝ *կոնյուգատներին*): Կ-մամբ միաձուլվում է ձևաբանությամբ միմյանց նման 2 անշարժ, վեգետատիվ բջիջների պարունակությունը: 2. Ինֆուզորիաների սեռ. կենսընթաց, որի դեպքում առանձնյակների միջև տեղի է ունենում կորիզ. ապարատի մասերի և պրոտոպլազմայի փոխանակություն: 3. Գեն. նյութի փոխանցման եղանակ՝ մեկ բակտերիային բջջից մյուսին: 4. Հոմոլոգ քրոմոսոմների միաձուլումը, որի դեպքում նրանց միջև կարող է տեղի ունենալ հոմոլոգ հատվածների փոխանակություն:

ԿՈՆՅՈՒՆԿՏՈՒՐԱ (լատ.՝ conjungo – կապել, միավորել) **տնտեսական**, յուրաքանչյուր տվյալ պահի տնտ-յան վիճակը, վերարտադր-յան գործընթացի որոշակի պայմանները: Կ-ի ձևավորման ու փոփոխման հիմքում գլխավորապես այն գործոններն են, որոնք բնորոշում են գների, արժեթղթերի, արտադր-յան չափերի, զբաղվածության ևնի շարժը:

ԿՈՆՅՈՒՍ Գեորգի Էդուարդովիչ (1862–1933), երաժշտության տեսաբան, կոմպոզիտոր (ծագումով՝ ֆրանսիացի): ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1927): Կ-ին աշակերտել է նաև Կոստանդին *Սարաջևը*: Մետրոտեկտոնիզմի տեսության (երաժշտ. երկում համաչափության և համամասնության միասն. օրենք) հիմնադիրը: Հեղինակ է «Երաժշտական ձևի մետրոտեկտոնիկ ուսումնասիրություն» (1933) աշխ-յան:

ԿՈՆՆՈԼԼԻ (Connolly) Ջեյմս (1868–1916), իռլանդացի հասս. գործիչ: Իռլանդիայի սոց. հանրապետ. կուս-յան հիմնադիր (1896): 1903–10-ին՝ ԱՄՆ-ում: Մասնակցել է «Աշխարհի արդյունաբերող բանվորներ» կազմ-յան ստեղծմանը: Դուբլինի գործադուլի (1913–14) և 1916-ի Իռլանդ. ապստամբության գլխ. ղեկ-ներից: Գնդակահարվել է անգլ. իշխանությունների հրամանով:

ԿՈՆՈ Ֆումիմարո (1891–1945), Ճապոնիայի վարչապետ՝ 1937–39 և 1940–41-ին: Ճապոնիայի կապիտուլյացիայից հետո ինքնասպան է եղել:

ԿՈՆՈԼԼԻ (Conolly) Ջոն (1794–1866), իռլանդացի հոգեբույժ, հոգեբուժության հիմնադիրներից: Հիմն. աշխ-ը՝ «Հոգեկան հիվանդների բուժումը՝ առանց կաշկանդումների» (1856), վերաբերում է հոգեկան հիվանդների «ազատությունը չսահմանափակելուն» (զսպաշապիկների վերացում, մահճակալին, բազմոցին չկապելը), որը ճանաչվել է ժամանակակից հոգեբուժ. հիմնարկի անհրաժեշտ պայման:

ԿՈՆՈՆՈՎ Անդրեյ Նիկոլաևիչ (1906–1986), ռուս լեզվաբան-թյուրքագետ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1974): Հեղինակ է թյուրք. լեզուներին, արևելագիտ-յան պատմությանը վերաբերող աշխ-ների: Ուսումնասիրել է VII–XIX դդ-ի թյուրք. ռունային գրավոր հուշարձանների քերակ-ը:

ԿՈՆՈՎ (Conow) Սթեն (1867–1948), նորվեգացի լեզվաբան: Հեղինակ է հնդեվրոպագիտ-յանը, մասնավորապես՝ իրանագիտ-յանը (միջինիրան., հնդիրան. լեզուներ), հնդկագիտ-յանը (առաջարկել է *դրավիդյան լեզուների* ծագումնաբան. դասակարգումը, նկարագրել Հնդկաստանի լեզուներն ու բարբառները), չինտիբեթ., ավստրո-ասիական լեզուներին վերաբերող աշխ-ների:

ԿՈՆՈՎԱԼԵՆԿՈ Վիկտոր Սերգեևիչ (1938–1996), ռուս հոկեիստ, դարպասապահ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1963): Օլիմպ. խաղերի (1964, 1968), աշխարհի (1963–68, 1970–71) և Եվրոպայի (1963–68, 1970) չեմպիոն:

ԿՈՆՈՎԱԼՈՎ Ալեքսանդր Իվանովիչ (ծ. 1934), ռուս քիմիկոս-օրգանիկ: ՌԳԱ ակադ. (1992, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1990-ից): 1979–90-ին՝ Կազանի համալսարանի ռեկտոր, 1991–2001-ին՝ ՌԳԱ Կազանի գիտ. կենտրոնի Օրգ. և ֆիզքիմիայի ինստ-ի տնօրեն, 2001-ից՝ գիտ. կենտրոնի նախագահ: Աշխ-ները վերաբերում են չհագեցած օրգ. միացությունների ռեակցիոնունակությանը (ցիկլամիացման ռեակցիաներին ևն), մակրոցիկլիկ միացությունների քիմիային, վերականգնվող հումքի քիմիային: ԽՍՀՄ Պետ. մրց. (1987):

ԿՈՆՈՎԱԼՈՎ Ալեքսանդր Նիկոլաևիչ (ծ. 1933), ռուս նյարդավիրաբույժ: ՌԲԳԱ (1982), ՌԳԱ (2000) ակադ.: ՌԴ գիտ. վաստ. գործիչ (1998), Աշխ. հերոս (2013): Եղել է Ն. Ն. Բուրդենկոյի անվ. նյարդավիրաբուժության ԳՀԻ տնօրեն (1974–2014): Աշխ-ները վերաբերում են ԿՆՀ-ի անոթ. հիվանդությունների բուժմանը և ուղեղ. արյան շրջանառության կլինիկ. անատոմությանը: ԽՍՀՄ (1985), ՌԴ (1995, 2006) Պետ. մրց-ներ:

ԿՈՆՈՎԱԼՈՎ Անատոլի Նիկոլաևիչ (ծ. 1936), ռուս մաթեմատիկոս: ՌԳԱ ակադ. (2006, թղթ. անդամ՝ 1991-ից): Աշխ-ները վերաբերում են մաթ. մոդելավորմանը և հաշվող. փորձարարությանը: ԽՍՀՄ Պետ. (1988), ՌԴ Կառ-յան մրց-ներ:

ԿՈՆՈՎԱԼՈՎ Դմիտրի Պետրովիչ (1856–1929), ռուս քիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1923): Լուծույթների քիմ. տեսության հիմնադիրներից է: Ուսումնասիրել է լուծույթների գոլորշիների ճնշումը, հաստատել է իր անունով կոչված (1881–84) օրենքներ: Ներմուծել է ակտիվ «մակերևույթ» հասկացությունը:

ԿՈՆՈՎԱԼՈՎ Միխայիլ Իվանովիչ (1858–1906), ռուս քիմիկոս-օրգանիկ: Բացահայտել է (1888) նոսր ազոտական թթվի նիտրացնող ազդեցությունը հագեցած ածխաջրածինների վրա (*Կոնովալովի ռեակցիա*): Աշակել է նիտրոմիացություններից օքսիմների, սպիրտների, ալդեհիդների, կետոնների ստացման եղանակներ, նիտրացման ռեակցիան օգտագործել ածխաջրածինների կառուցվածքը որոշելու համար:

ԿՈՆՈՎԱԼՈՎԻ ՌԵԱԿՑԻԱ, պարաֆին. և ցիկլոպարաֆին. միացություններում, ինչպես նաև ճարպարոմատիկ միացությունների կողմնային շղթայում ջրածնի ատոմի տեղակալում նիտրո (–NO_2) խմբով՝ ազոտական թթվով ուղղակի նիտրացմամբ: Հայտնագործել է (1888) ռուս քիմիկոս Մ. Ի. *Կոնովալովը*:

ԿՈՆՈՎԱԼՈՎԻ ՕՐԵՆՔՆԵՐ, 2 օրենք, որոնք արտահայտում են ցնդող 2 նյութերից կազմված համակարգում հեղուկ լուծույթի բաղադրության և հագեցած գոլորշու (կամ եռման ջերմաստիճանի) բաղադրության ու ճնշման միջև կապը: Փորձնականորեն և տեսականորեն հաստատել է Դ. Պ. *Կոնովալովը*: Ավելի ընդհ. հարաբերակցություններ այլ ճանապարհով ստացել է (1876–78) Ջ. *Գիբսը*:

ԿՈՆՉԱԼՈՎՍԿԻ (Միխալկով-Կոնչալովսկի) Անդրեյ Սերգեևիչ (ծ. 1937), ռուս կինոռեժ.: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1980): Ս. Վ. *Միխալկովի* և Ն. Պ. Կոնչալովսկայայի որդին, Ն. Ս. *Միխալկովի* եղբայրը: «Նիկա» կինոակադ-ի նախագահ (2013-ից): Նկարահանել է «Առաջին ուսուցիչը» (1965), «Քեռի Վանյա» (1971), «Ռոմանս սիրահարների մասին» (1974), «Սիբիրիադա» (1979) և այլ ֆիլմեր: 1980-ական թթ-ից աշխատել է ԱՄՆ-ում («Մարիայի սիրեկանները», 1984, «Փախստական գնացքը», 1985, «Ամաչկոտ մարդիկ», 1987, «Մերձավոր շրջան», 1992, ևն), 1990-ական թթ-ից՝ կրկին Ռուսաստանում («Չալիկ հավիկը», 1994, «Հիմարների տունը», 2002, «Փայլ», 2007, «Փոստատար Ալեքսեյ Տրյապիցինի սպիտակ գիշերները», 2014, ևն): Բեմադրել է նաև թատեր. և օպեր. ներկայացումներ:

ՌԽՖՍՀ Պետ. (1990), Վենետիկի կփ-ի «Արծաթե առյուծ» (2014) մրց-ներ:

ԿՈՆՉԱԼՈՎՍԿԻ Մաքսիմ Պետրովիչ (1875–1942), ռուս թերապևտ: Գիտ. դպրոցի հիմնադիր: ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1934): Պ. Պ. *Կոնչալովսկու* եղբայրը: Աշխ-ները վերաբերում են մարսողության օրգաններին, արյան ախտաբանությանը, ռևմատիզմին, այսպես կոչված նախահիվանդագին վիճակների խնդիրներին և մարդու աշխ. գործունեության կանխատեսմանը:

ԿՈՆՉԱԼՈՎՍԿԻ Պյոտր Պետրովիչ (1876–1956), ռուս գեղանկարիչ: ՌԽՖՍՀ ժող. նկարիչ (1946): ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի ակադ. (1947): Մ. Պ. *Կոնչալովսկու* եղբայրը: «Բուբնովի վալետ» գեղ. միավորման հիմնադիրներից: Հեղինակ է կենսուրախ, գունագեղ ժանր. նկարների («Վերադարձ տոնավաճառից», 1926), դիմանկարների («Վ. Վ. Իվանովիչ», 1941, ՀԱՊ), բնանկարների և նատյուրմորտների («Եղրևանի», 1933): ԽՍՀՄ Պետ. մրց. (1943):

ԿՈՆՇԵԳԱՐՅԱ, գետ Չինաստանի արմ-ում: Երկ.՝ 550 *կմ*, ավազանը՝ 184,4 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսն Արլ. Տյան Շանի լ-ներից ելքի հատվածում՝ 36 $մ^3/վ$: Սկիզբ է առնում Բաղրաշկել լճից, հոսում Թարիմի հարթավայրով, որտեղ հաճախակի փոխում է ուղղությունը և լցվում Թարիմ գետ կամ Լոբնոր լիճ:

ԿՈՆՇԵՐՏՈ ԳՐՈՍՍՈ (իտալ.՝ concerto grosso – մեծ կոնցերտ), բազմամաս երաժշտ. երկ՝ տարածված XVII–XVIII դդ-ում: Նախապես 5-մասանոց Կ. գ-ներ գրել են լար. նվագախմբի համար, հետագայում ներմուծել են նաև փողավոր նվագարաններ (3–4-մասանոց): Կ. գ-ներ են ստեղծել Ա. Կորելլին, Ա. Վիվալդին, Յ. Ս. Բախը, Գ. Ֆ. Հենդելը:

ԿՈՆՇԻՆԻ (Concini), **Կոնչինո**, մարկիզ դ'Անկր (1575–1615), ֆրանսիացի պետ. գործիչ: Ֆրանսիա է ժամանել Իտալիայից՝ Հենրի IV-ի կնոջ՝ Մարիա Մեդիչիի հետ: Թագավորի մահից հետո (1610) դարձել է 1-ին սենեկապետ, մարշալ և Ֆրանսիայի փաստացի տիրակալը: Սպանվել է պալատ. դավադրության ժամանակ:

ԿՈՆՍԵՆՍՈՒՍ (consensus – համաձայնություն), **փոխհամաձայնություն**, խորհրդա-

բաններում, խորհրդաժողովներում որոշումների ընդունում, միջազգ. պայմանագրերի կնքման ժամանակ մասնակիցների ընդհ. համաձայնություն՝ առանց ձևական քվեարկության՝ առարկությունների բացակայության դեպքում: Կ-ի մեթոդն ընդունվել է ՄԱԿ-ի մի շարք մարմիններում, օգտագործվում է միջազգ. համաժողովներում և խորհրդակցություններում:

ԿՈՆՍԵՊՍԻՈՆ (Concepcion), ք. Չիլիում, համանուն կոմունայի, պրովինցիայի և Բիո-Բիո մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 229,6 հզ. (2012): Կարևոր տրանսպորտ. և տնտ. կենտրոն է:

ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ (իտալ.՝ conservatorio – ապաստարան), երաժշտ. բարձրագույն (որոշ երկրներում՝ միջնակարգ) ուս. հաստատություն, որտեղ պատրաստում են երաժիշտ-կատարողներ, կոմպոզիտորներ, երաժշտագետներ: Առաջին Կ. հիմնադրվել է Փարիզում XVIII դ-ի վերջին, հետագայում՝ Եվրոպայի այլ երկրներում: Տես նաև *Երևանի պետական կոնսերվատորիա*:

ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱ (լատ.՝ consistorium – հավաքատեղի, խորհուրդ), 1. Հին Հռոմում կայսեր գաղտնի խորհուրդ: 2. Կարդինալների խորհրդակցություն կաթոլիկ եկեղեցում՝ պապի նախագահությամբ: 3. Բողոքականության մեջ եկեղեց-վարչ. մարմին:

«ԿՈՆՍՈԼԱՏՈ ԴԵԼ ՄԱՐԵ» (իտալ.՝ Consolato del mare), *միջազգային ծովային իրավունքի* օրենքների և սովորույթների կատալոներեն ժող.: Ստեղծվել է XIII դ-ի վերջ–XIV դ-ի 1-ին կեսին: Հայտնի են նաև որպես բարսելոնյան օրենքներ (հավանաբար հրատարակվել է Բարսելոն ք-ում): Մի շարք երկրներում (օր.՝ Մեծ Բրիտանիայում) «Կ. դ. մ.»-ի նորմերը գործել են մինչև XIX դ.: «Կ. դ. մ.»-ի կազմմանը մասնակցել է նաև Կիլիկիայի հայկ. պետությունը և գործնականում կիրառել դրա նորմերը:

ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ (լատ.՝ consortium – գործակցություն, ընկերակցություն), 1. փոխառության համատեղ տեղաբաշխման կամ միասն. որևէ արդ. նախագծի իրականացման համար մի քանի բանկերի կամ արդ. ձեռն-ների ժամանակավոր համաձայնություն: 2. Տնտեսապես անկախ ֆիրմաների կամ կազմ-յունների ժամանակավոր միություն, որի նպատակը համակարգված ձեռնարկատիր. գործունեությունն է:

ԿՈՆՍՏԱՆՏԱՆ (լատ.՝ constans – կայուն, անփոփոխ), պղնձի (հիմքը) համաձուլվածքը նիկելի (~40 %) և մանգանի (~1,5 %) հետ: Բարձր տեսակարար էլ. դիմադրությամբ, ջերմաստիճանից թույլ կախվածությամբ համաձուլվածք է: Պատրաստում են ռեոստատներ, չափող և տաքացնող սարքերի տարրեր, ջերմազույգեր:

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ I, Կոնստանտինոս (1868–1923), Հունաստանի թագավոր՝ 1913–17 և 1920–22-ին՝ *Գյուկսբուրգների* հարստությունից: 1897-ի հույն-թուրք. և 1912–13-ի Բալկանյան պատերազմներում գլխավորել է հուն. բանակը: 1919–22-ի հույն-թուրք. պատերազմում հուն. բանակի պարտությունից հետո հրաժարվել է գահից:

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ II, Կոնստանտինոս (ծ. 1940), Հունաստանի թագավոր՝ 1964–74-ին՝ *Գյուկսբուրգների* հարստությունից: 1967-ի դեկտ-ից՝ Իտալիայում, այնուհետև՝ Մեծ Բրիտանիայում: Երկրի պետ. կարգում փոփոխություններ կատարելու նպատակով անցկացված հանրաքվեից (08.12.1974) հետո զրկվել է գահից:

ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՎ, Բորիս Պավլովիչ (1910–1969), ռուս ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1960, փոխնախագահ՝ 1967-ից): Սոց. աշխ. հերոս (1954): Ղեկավարել է իզոտոպների արդ. անջատման (1945-ից) և պլազմայով արատորոշման (1957-ից) աշխ-ները: Աշխ-ները վերաբերում են տես. և կիրառ. ձայնագիտ-յանը, աստղաֆիզիկային են: ԽՍՀՄ Պետ. (1953), Լենինյան (1958) մրց-ներ:

ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՎ, Կոնստանտին Իվանովիչ (1818–1871), հրետանու, հրթիռ. տեխնիկայի, սարքաշինության բնագավառի ռուս գիտնական: Գեն.-լեյտ. (1864): Ստեղծել է մարտ. վառոդ. հրթիռների, գործարկման հաստոցների հաշվարկման և նախագծման գիտ. հիմունքները, մշակել հրթիռների պատրաստման տեխնոլոգիան:

ԿՈՆՍՏԱՆՏԻՈՍ I ՔԼՈՐՈՍ (Constantius Chlorus, մոտ 264–306), Հռոմի կայսր՝ 305-ից: Կոնստանտին I Մեծի հայրը: Դիոկղետիանոս կայսեր օրոք եղել է զորահրամ.:

ԿՈՆՍՏԱՆՑԱ, (Constanta), ք-նվինգստ Ռումինիայում՝ Սև ծովի ափին, համանուն ժուդեցի վարչ. կենտրոնը: Բն.՝ 283,8 հզ. (2011): Նավթամուղով կապված է Պլոեշտիի հետ: Ունի հնագիտ. և գեղարվ-ի թանգարաններ: Կ-ի տեղում հոնացի հույները VI դ-ում հիմնադրել են Տոմիս ք-պետությունը: Հռոմի Կոստանտին Մեծ կայսրը (306–337) քաղաքը վերանվանել է Կոնստանդինիանա: 1413–1878-ին Կ. եղել է օսմ. տիրապետության տակ: 1878-ից Ռումինիայի կազմում է:

Հայերը Կ-ում բնակություն են հաստատել XVIII դ-ից, նրանց թիվը ստվարացել է հատկապես 1894–96-ի արդուլհամիդյան և 1922-ի Զմյուռնիայի կոտորածներից փրկվածների, ինչպես նաև 1990-ական թթ-ի սկզբներին ՀՀ-ից արտագաղթածների հաշվին: Գործել են Սբ Աստվածածին եկեղեցին (XIX դ.), բարեգործ., մշակութ., հայրենակց., մարզ. միություններ: Ներկայում Կ-ում ապրում է շուրջ 230 հայ:

ԿՈՆՍՏԱՆՑԻ ՏԻԵԶԵՐԱԺՈՂՈՎ 1414–1418, Հռոմ. կաթոլիկ եկեղեցու 2-րդ խոշոր տիեզերաժողովը. գումարվել է Բոդենի Կոնստանց ք-ում (Գերմանիա)՝ հերետիկոսության դեմ պայքարելու նպատակով: Ըստ կաթոլիկ ավանդության՝ կոչվել է XVI ընդհանր. տիեզերաժողով. դարձել է տիեզերաժողովների զարգացման գագաթնակետը: Հավատին և համընդհ. եկեղեց. բարեփոխումներին, վարչակազմակերպ. խնդիրներին վերաբերող որոշումները պարտադիր էին բոլոր եկեղեցիների համար:

Կ. տ. տապալել է Հովհաննես XXIII (1415-ի մայիս) և Բենեդիկտոս XIII (1417-ի հուլիս) հակապապերին, ընդունել է Գրիգորիոս XII (1415-ի հուլիս) պապի կամավոր հրաժարականը, ընտրել Մարտինիոս V-ին (1417-ի նոյեմբ.): Կ. տ-ի որոշումներով փաստացի վերացել է կաթոլիկ եկեղեցու պառակտումը: Կ. տ. դատապարտել է Ջ. Ուիքլիֆի և Յան Հուսի բարեփոխ. հայացքները, որն էլ առիթ է դարձել Հուսի շարժման զարգացմանը:

«ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻՈՆՆՈՅԵ ՊՐԱՎՈՍՈՒԴԻԵ» («Конституционное провосудие» – «Սահմանադրական արդարադատություն»), իրավաբ. հանդես (1997-ից, Երևան՝ ռուս.): Գլխ. խմբ.՝ ՀՀ ՍԴ նախագահ Գագիկ *Հարությունյան*:

ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎԻԶՄ (լատ.՝ constructio – կազմում, կառուցում, կառուցվածք), ուղղություն 1910-ական թթ-ի վերջ–1930-ական թթ-ի սկզբի (առավելապես՝ ԽՍՀՄ-ում) արվ-ում. հիմն. խնդիրը շրջակա նյութ. միջավայրի նախագծումն էր: Պոեզիայում Կ. դրսևորվել է «նյութի նպատակային կառուցվածքով», արձակի ձևերի, մասնագիտ. ժարգոնի յուրացմամբ, քնար. հույզերի մերժումով: Կ. արտացոլվել է նաև 1920-ական թթ-ի հայ մի շարք ճարտ-ների (Տ. Երկանյան, Կ. Հալաբյան, Մ. Մազմանյան, Գ. Քոչար) ստեղծագործություններում:

ԿՈՆՍՈՒԼՆԵՐ (լատ.՝ consul), Հին Հռոմում 1 տարով ընտրվող 2 պետ. բարձրագույն պաշտոնյաներ: Օժտված էին քաղաքաց. և զինվ. բարձրագույն իշխանությամբ: Կայսրության ժամանակաշրջանում կորցրել են փաստական իշխանությունը, պաշտոնը դարձել է պատվ. տիտղոս:

ԿՈՆՍՈՒԼՈՒԹՅՈՒՆ, Ֆրանսիայի պատմության ժամանակաշրջան՝ 1799-ի նոյեմբ. 9-ի (Բրյումերի 18)՝ Նապոլեոն Բոնապարտի հեղաշրջումից մինչև 1804-ի մայիսի 18-ին նրա կայսր հռչակվելը: Իշխանությունն անվանապես պատկանել է 10 տարով ընտրված (1802-ի օգոստ-ից՝ ցկյանս) 3 կոնսուլներին, իսկ փաստորեն՝ 1-ին կոնսուլ Բոնապարտին:

ԿՈՆՍՈՒՄԵՆՏՆԵՐ (լատ.՝ consumo – սպառել), կենդանի օրգանիզմներ, որոնք սննդային շղթայում սպառողներ են: Կ. են բոլոր տարասուն օրգանիզմները: Առաջին կարգի Կ. են բուսակեր կենդանիները, երկրորդ, երրորդ և հաջորդ կարգերի Կ. գիշատիչներն են: Տես նաև *Պրոդուցենտներ*:

ԿՈՆՎԵԿՑԻԱ (լատ.՝ convectio – բերել, հասցնել, մատակարարել), **փոխանցում**, զանգվածի, ջերմության և այլ ֆիզ. մեծությունների փոխանցում՝ միջավայրի (գազ, հեղուկ) մակրոսկոպիկ մասերի տեղաշարժման միջոցով: **Բնական** (կամ **ազատ**) **Կ.** առաջանում է միջավայրի անհամասեռության (ջերմաստիճանի և խտության գրադիենտ) պատճառով: **Ստիպողական Կ.** կատարվում է միջավայրի վրա արտաքին մեխ. ազդեցությամբ: **Մազանոթային Կ.** առաջանում է հեղուկի ազատ մակերևույթին, երբ առկա է մակերևութ. լարվածության արժեքների տարբերություն: Երկրի մթն-ում Կ-ի հետ է կապված ամպերի առաջացումը, Կ-ի հետևանքով Արեգակի վրա առաջանում է հատիկավորման երևույթը:

ԿՈՆՎԵՆՏ ազգային (Convention nationale), Ֆրանսիայի 1-ին հանրապետության օրենսդիր և գործադիր բարձրագույն մարմինը՝ 1792–95-ին: Կ-ի պատմությունը բաժանվում է 3 շրջանի. **ժիրոնդիստական Կ.**, երբ ղեկավարել են ժիրոնդիստները: 1793-ի մայիսի 31–հունիսի 2-ի ժող. ապստամբության հետևանքով նրանք վտարվել են Կ-ից, և իշխանությունն անցել է յակոբինյաններին: **Յակոբինյան Կ.** իրագործել է հեղ. կարևոր խնդիրներ: Կ. և նրան հաշվետու *Հասարակական փրկության կոմիտեն*, *Հասարակական անվտանգության կոմիտեն* և մյուս կոմիտեները կազմել են յակոբինյանների հեղ. կառ-յունը: 1794-ի Թերմիդորյան հեղաշրջումը սկզբնավորել է այսպես կոչված **թերմիդորյան Կ.**, որը վերացրել է յակոբինյանների սոցիալ. ու ժողովրդավար. նվաճումները և նախապատրաստել է անցումը *դիրեկտորիային*:

ԿՈՆՎԵՆՑԻՈՆԱԼԻԶՄ, համաձայնողականություն, գիտ–յան փիլ. մեկնաբանման հոսանք, որի համաձայն՝ մաթ. և բնագիտ. տեսությունների հիմքում գիտնականների միջև համաձայնություններն են (կոնվենցիաներ): Կ–ի հիմնադիրն Ա. *Պուանկարեն* է, սկզբունքները ձևակերպված են Ռ. Կառնապի և Կ. Այդուկևիչի աշխ–ներում:

ԿՈՆՎԵՐԳԵՆՑԻԱ (լատ.՝ convergo – մոտենալ, նմանվել), (կենսբ.) կառուցվածքի և ֆունկցիաների միանմանության առաջացումը ծագմամբ համեմատաբար հեռավոր օրգանիզմների խմբերում էվոլյուցիայի ընթացքում: **Աչքի**, մոտակա առարկաները դիտելիս աչքի տեսող. առանցքների համամիտման ֆիզիոլոգ. գործողություն:

ԿՈՆՎԵՐԳԵՆՑԻԱՅԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, արմ. հասարակագիտ. հայեցակարգերից, ըստ որի՝ ժամանակակից հաս. զարգացման յուրահատկությունը 2 սոց–քաղ. համակարգերի մերձեցումն է «խառը հասարակարգում», որը հարթում է տնտ., քաղ. և գաղ. տարբերությունները կապիտալիզմի և սոցիալիզմի միջև: Նշանավոր ներկայացուցիչներն էին Ջ. Գելբրեյթը, Ու. Ռոսթոուն, Յ. Թինբերգենը և ուր.: Նման դատողություններ արել է նաև Ա. Դ. *Սախարովը*:

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ», առևտր. բանկ ՀՀ–ում: Հիմնադրվել է 1993–ին՝ որպես «Հյուսիս–հայկական» փայատիր. բանկ: 1997–ին վերակազմավորվել է «Կոնվերս բանկ» ՓԲԸ–ի:

ԿՈՆՎԵՐՍԻԱ, (տնտ.), 1. ռազմ. արդ–յան փոխադրումը քաղաքաց. արտադրանքի արտադր–յան (ռազմ. արտադր–յան Կ.): 2. Արժութ. ոլորտում՝ երկրի արժույթի փոխարկումն օտարերկրյա արժույթի՝ գործող փոխարժեքով, որը սահմանվում է արժութ. շուկայում տարբեր արժույթների նկատմամբ պահանջարկի ու առաջարկի հավասարակշռմամբ: 3. Ֆին. ոլորտում՝ պետ. փոխառության պարտատոմսերի թողարկման նախապես սահմանված պայմանների փոփոխում՝ տոկոսադրույքի նվազման, փոխառության գծով վճարումների և դրա մարման հետաձգման ուղիով:

ԿՈՆՎԵՐՍԻԱ ՆԵՐՔԻՆ (ֆիզ.), երևույթ, երբ գրգռված ատոմի միջուկն իր ավելցուկ. էներգիան փոխանցում է էլեկտրոններին (առավել հաճախ՝ միջուկին մոտ գտնվող K և L–թաղանթներին), որի հետևանքով տեղի է ունենում էլեկտրոններից մեկի (կոնվերսիոն էլեկտրոն) թռիչք ատոմի սահմաններից դուրս:

ԿՈՆՎԵՐՍԻԱ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ, պետ. պարտքի կառավարման միջոցառումներից, նախկինում թողարկած պետ. փոխառությունների փոխարինումը նորերով: Իրականացվում է վարկի մարման ժամկետների երկարաձգման և փոխառության տոկոսաչափի փոփոխման (որպես կանոն՝ նվազեցման) նպատակով:

ԿՈՆՎԻՉՆԻ (Konwitschny) Ֆրանց (1901–1962), գերմանացի դիրիժոր: 1949–62–ին ղեկավարել է «Գևանդհաուզ» (Լայպցիգ) նվագախումբը, 1955–62–ին՝ Բեռլինի գերմ. պետ. օպերայի գեղ. ղեկ.: Է. վան Բեթհովենի, Ռ. Վագների, Ռ. Շտրաուսի և այլ կոմպոզիտորների երկերի լավագույն մեկնաբաններից է:

ԳԴեհՀ Ազգ. մրց. (1951, 1956, 1960):

ԿՈՆՎԻՑԿԻ (Konwicki) Թադեուշ (1926–2015), լեհ գրող, կինոռեժ.: Հեղինակ է «Խոռոչ երկնքում» (1959), «Ժամանակակից երազահան» (1963, հայ.՝ 1977), «Լեհական համալիր» (1977), «Փոքրիկ հայտնություն» (1979) և այլ վեպերի: Նկարահանել է «Ամառվա վերջին օրը» (1958, միջազգ. Մեծ մրց.), «Ննջեցյալների հիշատակման օր» (1961), «Թռիչք» (1965) և այլ կինոնկարներ: Լեհաստանի Պետ. (1950, 1954) և այլ մրց–ներ:

ԿՈՆՏ (Comte) Օգյուստ (1798–1857), ֆրանսիացի փիլ., սոցիոլոգիայի (ինքն է ներմուծել հասկացությունը) և պոզիտիվիզմի հիմնադիրներից: Ձևակերպել է մարդկության մտավոր զարգացման «երեք շրջան»՝ աստվածաբան., մետաֆիզ. և պոզիտիվ կամ գիտ.: Դասակարգել է գիտ–ները՝ ըստ նրանց առարկաների բարդության աստիճանի: Ուշ շրջանի աշխ–ներում քարոզել է «մարդկության նոր կրոն», գիտակցության հիմքում դիտարկել է «պոզիտիվ բարոյականությունը»: Հեղինակ է «Պոզիտիվ փիլիսոփայության դասընթաց» (հ. 1–6, 1830–42), «Պոզիտիվ քաղաքականության համակարգ» (հ. 1–4, 1851–54) աշխ–ների:

ԿՈՆՏԱ, Գոնտա (Conta), Վասիլե Գրիգորեի (1845–1882), ռումինահայ փիլ., պետ–քաղ. գործիչ, իրավագետ: Իրավագիտ–յան դ–ր (1872): 1879–ին ընտրվել է Ռումինիայի խորհրդարանի անդամ, 1880–81–ին՝ լուսավորության նախարար: Հեղինակ է «Ճակատագրապաշտության տեսությունը» (1876, ֆրանս.՝ 1877), «Տեսակների ծագումը» (1877), «Մետաֆիզիկայի հիմունքները» (1888), «Տիեզերական տատանումների տեսությունը» (1876–77, ֆրանս.՝ 1895) և փիլ. այլ երկերի, որտեղ տվել է ժամանակի բնագիտ–յան և փիլ–յան առաջ քաշած մի շարք հարցերի մատերիալիստ. պատասխանները: Ուսումնասիրություններում անդրադարձել է հայերին և Հայաստանին:

ԿՈՆՏԱՐԻՆԻ (Contarini) Ամբրոջո (1429–1499), վենետիկցի դիվանագետ և ճանապարհորդ: 1474–ի փետր–ին գործուղվել է Թավրիզ, անցել է Հայաստանով: 1487–ին Կ. հրատարակել Է ուղեգրություն, որն արժեքավոր տեղեկություններ է պարունակում Պարսկաստանի, Այսրկովկասի, Ռուսաստանի, Լեհաստանի, Ղրիմի և Աստրախանի խանության մասին:

ԿՈՆՏԵՅՆԵՐ (անգլ.՝ container, < contain – խառնել), բազմակի օգտագործման չափորոշված տարողություն՝ փոխադրամիջոցներով բեռներ տեղափոխելու համար՝ առանց դրանք բեռնաթափելու փոխադրամիջոցը փոխելիս:

ԿՈՆՏԻՆՈՒՈՒՄ (լատ.՝ continuum – անընդհատ), 1. (մաթ.) բոլոր իրական թվերի բազմության հզորությունը **(Կ. հզորություն)** բազմությունների տեսությունում: 2. *Տոպոլոգիայում՝* կոմպակտության և կապակցվածության հատկություններով օժտված մետրիկ. տարածությունը **(տոպոլոգիական Կ.)**: Բոլոր իրական թվերի բազմությունը երբեմն անվանում են «թվային Կ.»: 3. Երևույթների, շարժընթացների անընդհատություն, անխզելիություն: 4. (Ֆիզ.) հոծ միջավայր, որի հատկությունները տարածության մեջ փոխվում են անընդհատ:

ԿՈՆՏՈՐՈՎԻՉ Ալեքսեյ Էմիլևիչ (ծ. 1934), ռուս. երկրաբան: ՌԳԱ ակադ. (1991, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1990–ից): 1997–2007–ին՝ ՌԳԱ ՍԲ նավթագազ. երկրբ–յան և երկրաֆիզիկայի ինստ–ի տնօրեն, այնուհետև՝ գիտ. խորհրդական: Աշխ–ները վերաբերում են նավթ. երկրբ–յան և օրգ. երկրաքիմիայի հարցերին: ՌԴ Պետ. (1994) և բազմաթիվ այլ մրց–ներ:

ԿՈՆՏՐԱԲԱՍ (իտալ.՝ contrabbasso), ամենամեծ չափսերով և ամենացածր հնչողության լարավոր–աղեղնավոր երաժշտ. գործիք: Ունի 4 լար, լարվածքը՝ կվարտային: Ընդգրկված է անսամբլներում և նվագախմբերում (հազվադեպ՝ մենակատար): Ստեղծվել է XVII դ–ում:

ԿՈՆՏՐԻԲՈՒՑԻԱ, (լատ.՝ contributio) տես **Հազմատուգանք**:

ԿՈՆՏՐԻՄԱՎԻՉՅՈՒՍ (Kontrimavičius) Վիտաուտաս (1930–2016), լիտվացի հելմինթոլոգ–մակաբուծաբան: Լիտվայի ԳԱ ակադ. (1980), ՌԳԱ թղթ. անդամ (1991, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1970–ից): Լիտվ. ԽՍՀ կենդբ–յան և մակաբուծաբանության ինստ–ի տնօրեն (1984–89), ԽՍՀՄ ԳԱ «Մակաբուծաբանություն» (ռուս.) ամսագրի գլխ. խմբ. (1984–90): Աշխ–ները վերաբերում են կաթնասունների հելմինթների էկոլոգիայի, կարգաբանության, կենդանաաշխարհագրության, մակաբույծների ֆաունիստ. համալիրներին: Բալթյան մակաբուծաբանների ընկյան հիմնադիր–նախագահ (1992–2002):

ԿՈՆՏՈՒՐ, տես *Մալջարդ*:

ԿՈՆՏՈՒՐԱՋԱՆ Պետրոս Ներսեսի (1905–1956), գեղանկարիչ: Բնանկարներն ու դիմանկարները («Բանվորական թաղամաս», «Գետափին. քաղաքային տեսարան», «Շագանակ վաճառող աղջիկը» ևն) աչքի են ընկնում նուրբ ու թախծոտ տրամադրությամբ: Հեղինակ է նաև «Սևան» և «Արաբկիր» նկարաշարերի և այլ գործերի:

ԿՈՆՐԱԴ (Konrád) Դիորդ (ծ. 1933), հունգար գրող: 1976–89–ին՝ այլախոհ: Հեղինակ է ժամանակակից հաս–յան մեջ հումանիստ. խնդիրներ շոշափող «Այցելուն» (1969) պատմվածքի, XX դ–ի անհատի ազատության և անազատության թեմաներով «Մասնակիցը» (1982), «Պարահանդես՝ պարտեզում» (1989), «Լեռան վրա՝ արեգակի խավարման ժամանակ» (2003) վեպերի:

ԿՈՆՐԱԴ Նիկոլայ Իոսիֆովիչ (1891–1970), ռուս արևելագետ (ծագումով՝ գերմանացի): ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1958): ԽՍՀՄ–ում գիտ. ճապոնագիտ–յան հիմնադիրներից: Աշխ–ները վերաբերում են Ճապոնիայի և Չինաստանի գրկ–յանը, լեզվաբ–յանը, պատմությանը, մշակույթի պատմությանը, Արևմուտքի և Արևելքի երկրների պատմության ու մշակույթի զարգացման խնդիրներին: Հեղինակ է նաև «Ճապոնական ազգային գրական լեզվի շարահյուսություն» (1937) աշխ–յան: «Ճապոներեն–ռուսերեն մեծ բառարան»–ի (1970) գլխ. խմբ.:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1972, հետմահու):

ԿՈՆՐԱԴ (Conrad) Ջոզեֆ (Յուզեֆ Թեոդոր Կոնրադ Կոժենյովսկի, 1857–1924), լեհ անգլիագիր գրող: Նորոմանտիկ. թեմաներով են հագեցած «Օլմեյերի քմահաճույքը» (1895), «Լորդ Ջիմը» (1900), «Խավարի սիրտը» (1902) վեպերը, որտեղ հերոսները հաս–յան հպարտ և խիզախ «խորթ զավակներն են»: «Արևմուտքի աչքերով» (1911) վեպում պատկերել է ռուս հեղ–ներին:

ԿՈՆՐԱԴ II (Konrad, մոտ 990–1039), Հռոմ. սրբազան կայսրության կայսր՝ 1024–ից: Ֆրանկոնյան հարստության հիմնադիրը: Ուժեղացրել է կենտր. իշխանությունը՝ հենվելով մանր ավատառուների վրա:

1032–34-ին կայսրությանն է միացրել Արելատը (Բուրգունդիայի թագավորություն):

ԿՈՆՐԱԴ ՖՈՆ ՀՅՈՏՅԵՆԴՈՐՖ (Conrad von Hötzendorf) Ֆրանց (1852–1925), կոմս (1918), Ավստրո-Հունգարիայի զեն-ֆլդմ. (1916): 1906–11 և 1912–17-ին՝ ԳՇ պետ: ԱՀՊ-ի ժամանակ փաստացի ղեկավարել է ավստրո-հունգ. բանակի ռազմ. գործողությունները: 1917–18-ին՝ ռազմաճակատի գլխ. հրամ. Տիրոլում:

ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱ (լատ.՝ concentratio), տվյալ բաղադրամասի հարաբեր. քանակությունը ֆիզքիմ. համակարգում (խառնուրդ, լուծույթ, համաձուլվածք): Կ-ի արտահայտման եղանակներն են՝ **բաժնային Կ., ատոմական (մոլային) բաժնային, ծավալային բաժնային Կ-ներ**՝ (100-ով բազմապատկելով կստացվի Կ.՝ տոկոսներով): Հեղուկ համակարգերի Կ. արտահայտում են **տոկոսներով, մոլյարությամբ** (1 *լ* լուծույթում լուծված նյութի մոլերի թիվը), **նորմալությամբ** (1 *լ* լուծույթում լուծված նյութի գրամ-համարժեքների թիվը), **մոլալությամբ** (1000 *գ* լուծիչում լուծված նյութի գրամմոլերի թիվը), **տիտրով** (1 *մլ* լուծույթում լուծված նյութի *գ*-ների թիվը):

ԿՈՆՑԵՐՆ (անգլ.՝ concern), արտադր-յան կոմբինացման ու բամաճյուղայնացման հիման վրա արդ-յան, տրանսպորտի, առևտրի ձեռն-ների, բանկերի, ԳՀ կազմ-յունների, ուս. կենտրոնների, փորձարար. հրապարակների միավորման ժամանակակից առավել տարածված ձևը:

ԿՈՆՑԵՍԻԱ (լատ.՝ concession – թույլտվություն, զիջում), 1. պետությանը պատկանող բնական պաշարները, ձեռն-ները և այլ տնտ. օբյեկտներն օտարերկրյա պետությանը, ընկ-յանը կամ այլ անձի որոշակի ժամկետով շահագործման հանձնելու պայմանագիր: 2. Բանկերի ստացած պարգևավճարը՝ նոր թողարկված արժեթղթերի վաճառքի կազմակերպման համար:

ԿՈՆՑԵՐՏ (իտալ.՝ concerto – համաձայնություն), մեկ (հազվադեպ՝ մի քանի) մենակատար գործիքի և նվագախմբի համար գրված երաժշտ. երկ: Կ-ին բնորոշ են վիրտուոզ մենանվագը կամ մեներգը, մենակատարի մրցումը նվագախմբի հետ: Ձևավորվել է Իտալիայում XVI–XVII դդ-ում: Կ-ի դաս. տիպը բաղկացած է 3 մասից (առնատային ցիկլ), XIX–XXI դդ-ում՝ նաև 1 մասից (տես ***Կոնցերտինո***): Տարբերում են Կ-ի ***կոնչերտո գրոսսո***, ***սիմֆոնիա***, մեկ գործիքի, ձայնի և նվագախմբի, ***ա կապելլա*** երգչախմբի համար գրված տեսակները:

ԿՈՆՑԵՐՏԻՆՈ (իտալ.՝ concertino – փոքր կոնցերտ), 1. մենակատարի և նվագախմբի համար գրված երաժշտ. երկ (***կոնցերտից*** տարբերվում է փոքր չափերով, միամաս է, ունի կարճատև մասեր, նվագախմբի փոքր կազմ): 2. Մենակատարների խումբը՝ ***կոնչերտո գրոսսոյում*** և կոնցերտ. սիմֆոնիայում:

ԿՈՆՑԵՐՏՄԱՅՍՏԵՐ (գերմ.՝ Konzertmeister), 1. նվագախմբի 1-ին ջութակահարը (XVIII դ-ում գործիք. կապելլաներում կատարել է դիրիժորի դեր): 2. Նվագախմբի լար. խմբերից (ալտեր, թավջութակներ, կոնտրաբասեր) մեկի 1-ին կատարողը: 3. Դաշնակահար, որը համերգներին նվագակցում է երգիչներին և օգնում դերերգը սերտելիս:

ԿՈՆՔԱԶԴՐԱՅԻՆ ՀՈԴ (articulatio coxae), հոդավորում կոնքոսկրի կիսագնդաձև հոդափոսի (քացախափոս) և ազդրոսկրի գլխիկի միջև: Հոդում կատարվում են ստորին վերջույթի ծալում և տարածում, զատում և առբերում, պտույտ ներս և դուրս շարժումներ: Կ. հ. շրջապատված է պիրկ և ամուր հոդաշապիկով ու կապաններով:

ԿՈՆՖԵՏԱՑՄԱ, դժիսկազգիների ընտանիքի հովենիա ցեղի բույս: Հայրենիքը Չինաստանն է: Օգտագործում են հաստացած, քաղցր պտղակոթերը (մամլած, չորացրած՝ կոնֆետի տեսքով) և որպես գեղազարդիչ բույս:

ԿՈՆՖԻԳՈՒՐԱՑԻԱ ՄՈԼԵԿՈՒԼԻ (ուշ լատ.՝ configuratio – ձև տալ), ***մոլեկուլի գոյաձև***, մոլ-ում ատոմների կամ ատոմ. խմբերի տարած. դասավորությունը: ***Տարածական քիմիայի*** հիմն. հասկացություններից է: Պարզագույն դեպքերում մոլ-ի ատոմներից առաջացած երկրչփ. ձևերի կամ բազմանիստի բնութագիր է (օր.՝ CH_4-ի քառանիստ գոյաձև): Իզոմերները (երկրչփ., օպտիկ.) ունեն տարբեր գոյաձևեր: Կ. մ. որոշելու համար օգտագործում են ռենտգենակառուցվածք., քիրոպտիկ. եղանակները, ԵԿ, ԱՄ, ՄՄՌ սպեկտրադիտումները:

ԿՈՆՖԻՐՄԱՑԻԱ (լատ.՝ confirmation – հաստատում), կաթոլիկության մեջ եկեղեց. 7 խորհուրդներից (ուղղափառության մեջ և արլ. եկեղեցիներում համանման է օծման խորհրդին): Իրականացնում է եպս-ը՝ 7–12 տարեկան պատանիներին համայնքի մեջ ընդունելու համար:

ԿՈՆՖԼԻԿՏ (լատ.՝ conflictus – ընդհարում, բախում), **հակամարտություն**, 1. հակադիր շահերի, հայացքների, ձգտումների բախում, տարաձայնություն: 2. Գեղ. ստեղծագործության մեջ պատկերված գործող ուժերի՝ կերպարի և հանգամանքների հակամարտությունը, հակասությունը: Լինելով զարգացող գործողության հիմքը՝ Կ. անընդհատ փոխակերպվում է՝ հասնելով մինչև ***կուլմինացիա*** և ***հանգուցալուծում***: Կ-ի շուրջն են համախմբվում ստեղծագործության կերպարները: ***Սյուժե*** ունեցող երկերում Կ-ի ամենաբնորոշ ձևը դրական և բացաս. կերպարների հակադրությունն է, քնար. ստեղծագործության հիմքում՝ հաճախ բանաստեղծի իդեալի և շրջապատի անհաշտ հակասությունը: Կ-ի տեսությունն առաջինը հանգամանորեն մշակել է Գ. ***Հեգելը***:

ԿՈՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ***փարածական քիմիայի*** բաժին. ուսումնասիրում է մոլ-ի կոնֆորմացիաները, նրանց կապը նյութի ֆիզ., քիմ. և կենսբ. հատկությունների հետ, ինչպես նաև կոնֆորմացիոն հավասարակշռությունը: Կ. վ-յան հիմունքները դրել են Օ. ***Հասելը*** և Դ. ***Բարտոնը*** 1940–50-ին (Նոբելյան մրց., 1969):

ԿՈՆՖՈՒՑԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, բարոյաքաղ. ուսմունք, ծագել է Հին Չինաստանում և 2 հզ. տարուց ավելի մեծ ազդեցություն ունեցել նրա հոգևոր մշակույթի, քաղ. կյանքի և հասարակարգի վրա: Հիմնադրել է ***Կոնֆուցիոսը*** մ. թ. ա. VI դ-ում: Կ-յան ուսմունքի հիմքում «ազնվազարմ այրի» իդեալն է, որը համաձայնության մեջ է «երկնային պատվիրանի» և բարոյականության օրենքի (դաո) հետ, պաշտպանում է վարվելակարգը (լի), օժտված է ծնողների ու ավագների հանդեպ որդիական խոնարհումով (սյաո): Վերջինս մարդասիրության (ժեն) և այլ բարեմասնությունների հիմքն է ու երկրի կառավարման ամենաարդյունավետ եղանակը:

ԿՈՆՖՈՒՑԻՈՍ, **Կուն Ցզի** (լատ.՝ Confucius, մ. թ. ա. մոտ 551–479), չին. փիլ., ***կոնֆուցիականության*** հիմնադիրը: Երիտասարդ տարիքում դարձել է Չինաստանի առաջին արհեստավարժ մանկավարժը, ունեցել է շուրջ 3 հզ. աշակերտ: 50 տարեկանում քաղ. գործունեություն է ծավալել, դարձել Լու թագավորության բարձրաստիճան պաշտոնյա: Կ-ի գաղափարները շարադրված են «Լուն յուս» («Զրույցներ և դատողություններ») գրքում, որը կազմել են նրա աշակերտներն ու հետևորդները:

ԿՈՇ Էրիխ (1913–2010), սերբ գրող: Հոգեբ. ռեալիզմի ներկայացուցիչ: Դիմադրության շարժման մասնակից: Հեղինակ է պարտիզան. պայքարին նվիրված «Տիֆ» (1958), երգիծ. «Պատմություն Մեծ Մագ մականունով հսկա կետի մասին» (1956), «Միեժա» (1967), «Խրաբակի գործը» (1971) վեպերի, «Փրկչի հետքերով» (հ. 1–3, 1978) պատմավեպի, «Շամֆորի մահը» (1986) այլաբան. վեպի, «Բոսնիական պատմություններ» (1984) բանահյուս. թեմաներով փոքրիկ արձակ գործերի, «Երգիծանք և երգիծաբաններ» (1985) հոդվածների ժող-ի: Հայ. հրատարակվել է «Խայտաբղետ հասարակություն» (1976) ժող-ը:

ԿՈՇԲՈՒԿ (Coşbuc) Ջորջե (1866–1918), ռումին բանաստեղծ, հրապարակագիր, թարգմանիչ: Ռումինիայի ակադ-ի անդամ (1916): Ճանաչվել է «Զամֆիրայի հարսանիքը» (1889) պոեմով: Հեղինակ է «Բալլադներ և հովվերգություններ» (1893), «Մանվածք» (1896), «Խիզախության երգեր» (1904) և այլ ժող-ների: Թարգմանել է Հոմերոսի, Վիրգիլիոսի, Ա. Դանտեի, Զ. Բայրոնի, Ֆ. Շիլլերի և ուր. գործերից:

ԿՈՇԵՎՈՅ Պյոտր Կիրիլովիչ (1904–1976), ուկրաինացի զորապետ: ԽՍՀՄ բանակի մարշալ (1968): ԽՄ հերոս (1944, 1945): ՀՄՊ-ի ժամանակ՝ դիվիզիայի և կորպուսի, 1957–69-ին՝ մի շարք զինվ. օկրուգների զորքերի, 1965–69-ին՝ Գերմանիայում խորհրդ. զորախմբերի գլխ. հրամ.:

ԿՈՇԵՎՈՅ Օլեգ Վասիլևիչ (1926–1943), ***«Երիտասարդ գվարդիա»*** կոմերիտ. ընդհատակյա կազմ-յան կոմիսար ՀՄՊ-ի ժամանակ: ԽՄ հերոս (1943, հետմահու): Մահապատժի են ենթարկել ֆաշիստները:

ԿՈՇԻ (Cauchy) Օգյուստեն Լուի (1789–1857), ֆրանսիացի մաթեմատիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1831): Վերլուծ. ֆունկցիաների տեսության հիմնադիրներից: Աշխ-ները վերաբերում են դիֆերենցիալ հավասարումների տեսությանը, մաթ. ֆիզիկային, թվերի տեսությանը, երկրչփ-յանը: Հեղինակ է մաթ. վերլուծության դաս. դասընթացների: Կ-ի անունով հայտնի են ***Կոշիի խնդիրը, Կոշի–Ռիմանի պայմանը***:

ԿՈՇԻ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՆՔ, ճարտ. համալիր ՀՀ Արագածոտնի մարզի Կոշ գ-ից հս-արլ.՝ ձորալանջին: Եկեղեցին (VII դ.) սրբատաշ տուֆից խաչաձև գմբեթավոր հորինվածք է, խորանի 2 կողմերում՝ ավանդատներով: Համալիրի արլ-ում մատուռի ավերակներն են, արմ-ում՝ XIII դ-ի խաչքարերով և փոքր մատուռով գերեզմանոցը: Գործել է մինչև XVIII դ.: 1970–73-ին նորոգվել են եկեղեցու պատերն ու ծածկերը, պահպանվել են VII դ-ի որմնանկարների հատվածներ:

ԿՈՇԻԻ ԽՆԴԻՐ, խնդիր, որտեղ պահանջվում է գտնել դիֆերենցիալ հավասար-

ման այնպիսի լուծում, որը բավարարի սկզբն. պայմանները: *Դիֆերենցիալ հավասարումների* տեսության հիմն. խնդիրներից է, առաջին անգամ հանգամանորեն հետազոտել է Օ. *Կոշին.* օր.՝ $dy = 2xdx$ հավասարման համար կարելի է դնել Կ. խ.՝ գտնել $y = y(x)$ հավասարման լուծումը, որը $x = 0$-ի դեպքում ընդունում է $y = 1$ արժեքը, այսինքն՝ $y = x^2 + 1$:

ԿՈՇԻԿ ԱՆԱՊԱՏ, XII–XIII դդ-ի ճարտ. համալիր Արցախի Խաչեն գվթ-ում (այժմ՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանի Քոլատակ գ–ից 10–12 *կմ* հվ–արմ.): Հիմն. հուշարձանախումբը բաղկացած է 3 եկեղեցուց: Գլխ. եկեղեցին քառակուսի աղոթասրահով, պատաձև խորանով կառույց է, որին հս–ից և հվ–ից կից են մյուս եկեղեցիները:

ԿՈՇԻ–ՌԻՄԱՆԻ ՊԱՅՄԱՆ, 1-ին կարգի մասնակի ածանցյալներով դիֆերենցիալ հավասարում, որն իրար է կապում $z = x + iy$ կոմպլեքս փոփոխականով $w = u + iv$ վերլուծ. ֆունկցիայի իրական և կեղծ մասերը՝

$$\frac{\partial u}{\partial x} = \frac{\partial v}{\partial y}, \quad \frac{\partial u}{\partial y} = -\frac{\partial v}{\partial x}.$$

Այս հավասարումներն առաջինը դիտարկել են Ժ. *Դ'Ալամբերը* և Լ. *Էյլերը*՝ Օ. *Կոշիի* և Բ. *Ռիմանի* աշխ-ների ի հայտ գալուց առաջ:

ԿՈՇԿԻՆ Լև Նիկոլաևիչ (1912–1992), ռուս կոնստրուկտոր: ՌԳԱ ակադ. (1991, ԽՍՀՄ ԳԱ ակադ.՝ 1984–ից), ՀամԳԳԱ ակադ. (1975): Սոց. աշխ. հերոս (1982): Աշխ-ները վերաբերում են ռոտոր. և ռոտորափոխակրիչ. տիպերի ինքնաշխատ հոսքագծերի տեսությանը: ԽՍՀՄ Պետ. (1943, 1980), Լենինյան (1962) մրց-ներ:

ԿՈՇԿԻՆ Միխայիլ Իլյիչ (1898–1940), ռուս կոնստրուկտոր: Սոց. աշխ. հերոս (1990, հետմահու): Նրա ղեկավարությամբ ստեղծվել է S-34 միջին՝ ԵՀՊ-ի ժամանակաշրջանի լավագույն տանկը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1942, հետմահու):

ԿՈՇՈՅԱՆ Զավեն Աղասու (ծ. 1940), քանդ.: ՀՀ վաստ. նկարիչ (1992): Հեղինակ է բարձրաքանդակների («Ա. Ս. Պուշկին», 1974, «Ավ. Իսահակյան», 1975, «Ալեք Մանուկյան», 1995, ևն), հուշարձանների («Խաչքար», 1988, «Լույս», 2002, «Քըրք Քըրքորյան», 2004, ևն), որոնց բնորոշ են զուսպ մոնումենտալության ու խոհաքնարականության նուրբ զուգորդումները:

ԿՈՇՈՅԱՆՑ Խաչատուր Սեդրակի (1900–1961), ֆիզիոլոգ: Պրոֆ. (1930): ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1939), ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1943): Աշխ-ները վերաբերում են ֆունկցիաների էվոլյուցիայի և էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի տես. հիմունքների հարցերին: Մշակել է (1937) նյարդ. գրգիռի ֆերմենտաքիմ. վարկածը, համաձայն որի՝ սինապսային հաղորդումն արդյունք է նախա– և հետսինապսային կառուցվածքների նյութափոխանակության շարժընթացների փոխներգործության: Բացահայտել է ացետիլխոլինի սպիտակուցային բնույթը:

ԽՍՀՄ Պետ. (1947), ԽՍՀՄ ԳԱ Մ. Վ. Լոմոնոսովի անվ. (1951) մրց-ներ, Լենինի, ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (2) և «Պատվո նշան» շքանշաններ:

ԿՈՇՈՒԿՆԵՐ, 1. մաշկի վերին (եղջերային) շերտի՝ ճնշման ու շփման ենթակա հատվածների (ներբաններ, ձեռքերի ափեր ևն) պինդ գերաճումներ: 2. Նեղքիթ կապիկների նստատեղի շրջանում մաշկի մերկացած շրջան՝ ծածկված ճարպ. նրբաշերտով: 3. Մաշկի բարձիկանման հաստացումներ կոշտուկոտների ոտնաթաթի ներբան. մակերևույթին (ուղտերի մոտ նաև նախադաստակի, դաստակի, ծնկների, կրծքի վրա):

ԿՈՈՆԵՆ Ալիսա Գեորգևնա (1889–1974), ռուս. թատրոնի դերասանուհի (ծագումով՝ բելգիացի): ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1935): Ա. Յ. *Թաիրովի* կինը: 1906–13-ին՝ ՄԳԹ-ի, 1914–49-ին՝ Կամերային թատրոնի դերասանուհի: Ստեղծել է ողբերգ. կերպարներ (Ֆեդրա՝ Ժ. Ռասինի «Ֆեդրա», Ադրիենա Լեկուվրյոր՝ Է. Սկրիբի «Ադրիենա Լեկուվրյոր», Կոմիսար՝ Վ. Վ. Վիշնևսկու «Լավատեսական ողբերգություն», Էմմա Բովարի՝ «Տիկին Բովարի» ըստ Գ. Ֆլոբերի) ևն:

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ (լատ.՝ cooperatio – համագործակցություն), նախապես՝ կամավոր ընկ., որն իր անդամներին աջակցել է տնտ-յան վարման, արհեստագործության, մանր արտադր-յան կազմակերպման գործում, իրականացրել միջնորդ. գործառնություններ (արտադրանքի իրացում, փոխադրում ևն): Այժմ տարածված են Կ-ի սպառող., արհեստագործ., ֆինանսավարկ., միջնորդ վաճառահանման և այլ տեսակներ: **Կ. աշխատանքի,** աշխ-ի կազմակերպման ձև, որն արտադր-յան ընթացքում ապահովում է աշխատողների համատեղ գործողությունների համաձայնեցումը: Աշխ-ի պարզ կոոպերացման դեպքում բոլոր աշխատողները կատարում են համասեռ աշխ.: Բարդ կոոպերացիան հիմնված է աշխ-ի բաժանման վրա: **Կ. արտադրության,** արտադրանքի որոշակի տեսակների համատեղ պատրաստման մասնագիտացված արդ. ձեռն-ների (միավորումների), ինչպես նաև պետությունների միջև երկարատև արտադր. կապերի ձև:

ԿՈՉԱԿԱՆ, նախադասության որևէ անդամի հետ քերականորեն չկապված բառ (բառակապակցություն). ցույց է տալիս այն անձը (առարկան), որին ուղղված է խոսքը: Կ. լինում են գոյականները և գոյականաբար գործածվող այլ խոսքի մասեր:

ԿՈՉԵՇԿՈՎ Քսենոֆոնտ Ալեքսանդրովիչ (1894–1978), ռուս քիմիկոս-օրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1968): Սոց. աշխ. հերոս (1974): Աշխ-ները վերաբերում են մետաղօրգ. միացությունների քիմիային: Մշակել է ամինների և այլ օրգ. միացությունների սինթեզի եղանակներ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1948, 1967):

ԿՈՉԵՎՄԿԻ Վիկտոր Վասիլևիչ (1923–2005), ուկրաինացի բանաստեղծ, թարգմանիչ: ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1969): Հեղինակ է «Հայրենակիցներ» (1957), «Խնդության վարպետներ» (1960), «Սևանի ծիծեռնակը» (1962, հայ.՝ 1962), «Հասկեր և աստղեր» (1967, հայ.՝ 1967), «Ցոլքեր» (1973), «Անտառային տոնահանդես» (1980, հայ.՝ 1980), «Մտերմություն» (1983, հայ.՝ 1983) բանաստեղծությունների ժող-ների: Հայ. հրատարակվել են «Հավերժական խարույկներ» (1972) և այլ ժող-ներ: Պ. Տիչինայի անվ. մրց. (1976, «Բարև, իմ Հայաստան» շարքի համար): Թարգմանել է Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի և ուր. գործերից:

ԿՈՉԵՏԿՈՎ Անդրեյ Գրիգորևիչ (1908–1990), ռուս օդաչու: ԽՄ հերոս (1958): ԽՍՀՄ վաստ. փորձարկող օդաչու (1959):

ԿՈՉԵՏԿՈՎ Նիկոլայ Կոնստանտինովիչ (1915–2005), ռուս քիմիկոս-օրգանիկ: ՌԳԱ ակադ. (1991, ԽՍՀՄ ԳԱ ակադ.՝ 1979–ից), ԲԳԱ թղթ. անդամ (1957): Սոց. աշխ. հերոս (1985): Աշխ-ները վերաբերում են ածխաջրերի քիմիային: Սինթեզել է մի շարք դեղապատրաստուկներ:

Լենինյան (1988), Դեմիդովյան (1993) մրց-ներ:

ԿՈՉԵՏՈՎ Վսեվոլոդ Անիսիմովիչ (1912–1973), ռուս գրող: 1961–73-ին՝ «Օկտյաբր» (ռուս.) ամսագրի խմբ.: Հեղինակ է «Ժուրբինների ընտանիքը» (1952, կինոնկար՝ «Մեծ ընտանիք», 1954, հայ.՝ 1954), «Երշով եղբայրները» (1958), «Մարզկոմի քարտուղարը» (1961) ժամանակաշրջանի գաղափարախոս. և քաղ. իրադրության մասին վեպերի, ժամանակակից մտավորականին պատկերող «Քո ուզածն ինչ է» (1969) վեպի: Ինքնասպան է եղել:

ԿՈՉԵՐԳԱ Անատոլի Իվանովիչ (ծ. 1947), ուկրաինացի երգիչ (բաս): Ուկր. ԽՍՀ (1979), ԽՍՀՄ (1983) ժող. արտիստ: 1972-ից՝ Ուկրաինայի ՕԲԹ-ի, 1987–90-ին՝ Վիեննայի պետ. օպերայի մենակատար (Բորիս Գոդունով՝ Մ. Պ. Մուսորգսկու «Բորիս Գոդունով», Կուտուզով՝ Ս. Ս. Պրոկոֆևի «Պատերազմ և խաղաղություն», ևն):

Մ. Ի. Գլինկայի անվ. մենակատիչների համամիութ. (1971), Պ. Ի. Չայկովսկու անվ. միջազգ. (1974) մրցույթների դափնեկիր, Ուկր. ԽՍՀ ԼԿԵՄ (1980), Պետ. (1989) մրց-ներ:

ԿՈՉԵՐԳԱ Իվան Անտոնովիչ (1881–1952), ուկրաինացի դրամատուրգ: Հեղինակ է «Խնջույքի երգ» (1910, բեմ.՝ 1926) հեքիաթդրամայի, «Մարկոն դժոխքում» (1928) հեքիաթ. սյուժեով պիեսի, «Ժամագործն ու հավը» (1934, հայ.՝ 1937) փիլ. կատակերգության, «Սվիզկիի հարսանիքը» (1931), «Յարոսլավ Իմաստուն» (1946) դրամատիկ. պոեմի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1948):

ԿՈՉԵՐԳԻՆ Էդվարդ Ստեպանովիչ (ծ. 1937), ռուս բեմանկարիչ: ՌԽՖՍՀ ժող. նկարիչ (1988): ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի ակադ. (1991): Լենինգրադի դրամայի և կոմեդիայի (1963–66), Վ. Ֆ. Կոմիսարժևսկայայի անվ. դրամատիկ. (1966–72), Մեծ դրամատիկ. (1972-ից) թատրոնների գլխ. նկարիչ: Զևավորել է ռեժ. Գ. Ա. *Տովստոնոգովի* բեմադրությունները: ԽՍՀՄ (1978, 1984), ՌԴ (2001) Պետ. մրց-ներ:

ԿՈՉԻՆ Նիկոլայ Եվգրաֆովիչ (1901–1944), ռուս մեխանիկոս, մաթեմատիկոս, երկրաֆիզիկոս: Ժամանակակից դինամիկ. օդերևութաբանության ստեղծողներից: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939):

ԿՈՉԻՆԱ. Պելագեա Յակովլևնա (1899–1999), ռուս հիդրոդինամիկ, երկրաֆիզիկոս, մաթեմատիկոս: ՌԳԱ ակադ. (1991, ԽՍՀՄ ԳԱ ակադ.՝ 1958–ից): ԽՍՀՄ Սոց. աշխ. հերոս (1969): Աշխ-ները վերաբերում են ծծանցման տեսության, հիդրոդինամիկայի, դինամիկ. օդերևութաբանության և այլ հարցերի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946):

ԿՈՉՈՒՄՆԵՐ ՋԻՆՎՈՐԱԿԱՆ, անհատապես շնորհվում են ՋՈՒ-ում ծառայողներին և զինապարտներին: Կ. զ-ները հիմք են զինծառայողների միջև կրտսեր-ավագ (պետ) փոխհարաբերություններ ստեղծելու համար: ՀՀ ՋՈՒ զինծառայողների համար ընդունված են՝ շարքային կազմ (շարքային, եֆրեյտոր, կրտսեր սերժանտ, սերժանտ, ավագ սերժանտ, ավագ), ենթասպայական կազմ (ենթասպա, ավագ ենթասպա), սպայական կազմ՝ կրտսեր սպայական (կրտսեր լեյտ., լեյտ., ավագ լեյտ., կապիտան), ավագ սպայական (մայոր, փոխգնդ., գնդ.), բարձրագույն սպայական կազմ (գեն–մայոր, գեն–լեյտ., գեն–գնդ., բանակի գեն.) կոչումները:

ԿՈՉՈՒՄՆԵՐ ՊԱՏՎԱՎՈՐ, քաղաքացիների ծառայությունները պաշտոնապես ճանաչելու եղանակ: ՀՀ-ում սահմանվել են ՀՀ արվ., գիտ-յան, մշակույթի վաստ. գործիչ, վաստ. մանկավարժ, վաստ. արտիստ, ժող. արտիստ, վաստ. նկարիչ, ժող. նկարիչ, վաստ. ճարտ., վաստ. լրագրող, վաստ. բժիշկ, տնտ-յան վաստ. աշխատող, վաստ. իրավաբան, ֆիզ. կուլտուրայի և սպորտի վաստ. գործիչ, վաստ. մարզիչ, վաստ. կոլեկտիվ ևն պատվ. կոչումները:

ԿՈՊԱԵՎ, Յուրի Վասիլևիչ (1937–2012), ֆիզիկոս-տեսաբան: ՌԳԱ ակադ. (2008, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1990-ից): Աշխ-ները վերաբերում են պինդ մարմնի ֆիզիկային: ԽՍՀՄ Պետ. մրց. (1982, 1988):

ԿՈՊԱԿԱԲԱՆՔ, **բլեֆարոսպազմ**, կոպի շրջանաձև մկանի կծկանք: Հանդիպում է առավելապես շաղկապենու և եղջերաթաղանթի բորբոքման ժամանակ:

ԿՈՊԵԼԵՎ, Լև Զինովևիչ (1912–1997), ռուս գրող, գրականագետ, թարգմանիչ: 1980-ից պարտադրված տարագրվել է Գերմանիա: Հեղինակ է գերմ. գրկ-յանը, Բ. Բրեխտին (1966), Հ. Հայնեին (գերմ., 1981) նվիրված աշխ-ների, «Հնարավոր է արդյոք Ստալինի արդարացումը» (գերմ., 1968) հրապարակախոս. հոդվածների ժող-ի: «Պահպանել հավերժ» (1975), «Եվ ինձ համար կուռք ստեղծեցի» (1978) ինքնակենսագր. այլ գրքերի: 1982-ից ղեկավարել է ռուս-գերմ. հարաբերություններին նվիրված բազմահատորյակի նախապատրաստ. աշխ-ները:

ԿՈՊԵԼԻԱՆ Եֆիմ Զախարովիչ (1912–1975), հրեա դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1973): Լ. Ի. *Մակարովայի* ամուսինը: 1935-ից՝ Լենինգրադի դրամատիկ. մեծ թատրոնի դերասան (Իլյին՝ Ա. Մ. Վոլոդինի «Հինգ երեկո», Վերշինին՝ Ա. Պ. Չեխովի «Երեք քույր», ևն): Նկարահանվել է «Նիկոլայ Բաուման», «Ոճիր և պատիժ», «Վերադարձ» (Գրիգոր Վանունցի դերակատարը, 1972, Հայֆիլմ) և այլ ֆիլմերում:

ԿՈՊԵԼՅԱՆ Երվանդ Հարությունի (1923–2010), գրող, թարգմանիչ: Հեղինակ է «Երանի թէ...» (1948) բանաստեղծությունների, «Խճանկարներ» (1968), «Երազ չունեցող մարդիկ» (1984), «Հողով մկրտուածներ» (1992), «Կեանքի լուսանցքէն» (1998) և այլ պատմվածքների ժող-ների: Թարգմանել և հրատարակել է Բ. Լ. *Պաստեռնակի* «Դոկտոր Ժիվագո» վեպը, Հ. Ուելսի «Առաջին մարդիկը լուսնի վրայ» (1969), Ժ. Ուիսի «Զուիցերիացի Ռոպէնսոնը» (1969) վիպակները: ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» շքանշան (1998):

ԿՈՊԵԿ, ռուս. մանրադրամ, հավասար է 1/100 ռուբլու: 1535–1718-ին հատվել է արծաթից, 1704-ից՝ պղնձից: ԽՍՀՄ-ում հատվել է 1924–26-ին՝ պղնձից, 1926-ից՝ պղնձի և ցինկի համաձուլվածքից: Պահպանվել է Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի դրամ. համակարգերում:

ԿՈՊԵՆՀԱԳԵՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Դանիայի հնագույն համալսարաններից: Հիմնադրել է Քրիստիան I արքան 1479-ին: 2016-ին ուներ շուրջ 35 հզ. ուսանող:

ԿՈՊԵՌՆԻԿՈՍ (Kopernik, Copernicus) Նիկոլա (1473–1543), լեհ աստղագետ: Աշխարհի *արևակենտրոն համակարգի* ուսմունքի ստեղծողը: Հրաժարվել է մինչ այդ ընդունված՝ Տիեզերքում Երկրի ունեցած կենտր. դիրքի մասին ուսմունքից: Երկն. լուսատուների տեսանելի շարժումները բացատրել է Երկրի՝ իր առանցքի և մոլորակների (նաև Երկրի) Արեգակի շուրջը պտույտով: Իր ուսմունքը շարադրել է «Երկնոլորտների պտույտների մասին» (1543) հիմն. (և փաստորեն միակ) աշխ-յան մեջ, որը կաթոլիկ եկեղեցին արգելել է 1616–1828-ին:

ԿՈՊԵՐ, զույգ շարժուն, վարագուրանման մաշկ. ծալքեր, մարդու և ողնաշարավոր կենդանիների աչքերի շուրջը, որոնց հաստության մեջ են տեղակայված շարակցահյուսվածք. թիթեղը և ակնաճեղքը փակող շրջանաձև մկանը: Կ-ի ազատ եզրերին աճում են թարթիչները, բացվում ճարպագեղձերի ծորանները:

ԿՈՊԵՑԿԻ (Kopecky) Չեսլավ Վասիլևիչ (1932–1988), ռուս. քիմիկոս-անօրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1979): Աշխ-ները վերաբերում են բարձրամաքուր մետաղների ու համաձուլվածքների ստացման, անօրգ. նյութերի մշակման տեխնոլոգիաներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1968, 1983):

ԿՈՊԻՆՍԿԻ Իսայա (ծ. թ. անհտ–1640), եկեղեց. գործիչ, գրող: Եկեղեց. ունիայի և կաթոլիկության հակառակորդներից, Սպասո-Պրեոբրաժենյան Մգարյան մենաստանի հիմնադիրը (1619): 1631-ին ընտրվել է Կիևի մետրոպոլիտ, 1632-ին Պյոտր Մոգիլայի նախաձեռնությամբ զրկվել է մետրոպոլիայից: 1635-ին փախել է Բելոռուսիա:

ԿՈՊԻՏԱՌ (լատ.՝ Cupido – սիրո աստծու անունով), **Դղեակ Կոպիտառու, Քարն Կոպիտառա**, բերդ Լեռն. Կիլիկիայի հարմ. սահմանում: XII–XIV դդ-ում եղել է հայկ. իշխանանիստ ու եպիսկոպոսանիստ կենտրոն: Կ-ի զնդանում 1194-ին բանտարկվել է *Գրիգոր Ե Քարավէժ* կաթողիկոսը: Վերջին անգամ հիշատակվում է 1467-ին:

ԿՈՊՈ (Copeau) Ժակ (1879–1949), ֆրանսիացի ռեժ., դերասան: Ժամանակակից ֆրանս. ռեժ. արվ-ի հիմնադիրներից: 1913-ին հիմնադրել է «Հին աղավնատուն» (Փարիզ) թատրոնը (ղեկ.՝ մինչև 1924-ը): 1936–40-ին ստեղծագործել է *«Կոմեդի Ֆրանսեզ»*-ում:

ԿՈՊՊՈԼԱ (Coppola) Ֆրենսիս Ֆորդ (ծ. 1939), ամերիկացի կինոռեժ., սցենարիստ: Էպիկ., նաև սուր դրամատիկ. ֆիլմերի վարպետ («Կնքահայրը», 1972, «Զրույց», 1974, «Կնքահայր II», 1974, «Ապոկալիպսիսն այսօր», 1979, ««Կոտտոն» ակումբը», 1985, «Քարերի այգին», 1987, «Կնքահայր III», 1990, «Երիտասարդություն՝ առանց երիտասարդության», 2007, ևն):

«Օսկար» (1971, 1973, 1975, 1990), «Ոսկե գլոբուս» (1973, 1980), BAFTA (1980), «Ոսկե արմավենու ճյուղ» (1974, 1979) մրց-ներ:

ԿՈՊՏԵՎ Սերգեյ Վլադիմիրովիչ (1913–1992), ռուս երաժշտագետ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1965): 1940-ից՝ Երևանում: ԵՊԿ պրոֆ. (1979-ից): Հեղինակ է «Հայաստանի սիմֆոնիկ երաժշտությունը և գործիքային կոնցերտը» (1960, 1973, 1985), «Հայաստանի սիմֆոնիկ երաժշտությունը 1955–65 թվականներին» (1974) և այլ աշխ-ների:

ԿՈՊՏՅԱԵՎԱ Անտոնինա Դմիտրիևնա (1909–1991), ռուս գրող: Հեղինակ է «Ընկեր Աննա» (1946) վեպի, «Իվան Իվանովիչ» (1949, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1950) եռերգության, «Երկրի բարիքը» (1965), «Ուրալ գետի վրա» (գիրք 1, 2, 1969, 1978) պատմահեղ. և այլ վեպերի:

ԿՈՊՏՅՈՒԳ Վալենտին Աֆանասևիչ (1931–1997), ռուս քիմիկոս-օրգանիկ: ՌԳԱ ակադ. (1991, ԽՍՀՄ ԳԱ ակադ.՝ 1979-ից, փոխնախագահ՝ 1980–91-ին), ՌԳԱ ՍԲ նախագահ (1980-ից): Սոց. աշխ. հերոս (1986): Աշխ-ները վերաբերում են արոմատիկ միացությունների ռեակցիաների մեխանիզմներին և մոլ. վերախմբավորումներին:

ԿՈՊՈՒԼԱՅՈՒՄ (լատ.՝ copulatio – միացում), 1. երկու առանձնյակի մերձեցումը սեռ. հարաբերության ժամանակ: 2. Իգական և արական սեռ. բջիջների (գամետ) կամ արտաքնապես գրեթե չտարբերվող առանձնյակների միաձուլումը: Եթե իգական և արական գամետները միմյանցից խիստ տարբեր են, ապա դրանց միաձուլումը կոչվում է բեղմնավորում:

ԿՈՊՈՒԼՅԱՏԻՎ ՕՐԳԱՆՆԵՐ, զուգավորման օրգաններ, կենդանիների հատուկ օրգաններ, որոնց օգնությամբ արուների սերմնահեղուկն անցնում է էգերի օրգանիզմ: Հատուկ է միայն ներքին բեղմնավորություն ունեցող կենդանիներին: Կ. օ-ի ֆունկցիա կարող են կատարել խեցգետնակերպների, սարդերի վերջավորությունները, ձկների լողակների ելուստները ևն:

ԿՈՋԱՄԱՆՅԱՆ (Կոճամանյան) Բյուզանդ Մկրտչի (1909–1993), գեղանկարիչ: Արվում գերակայում են մայրության թեման և մանկության տխուր վերհուշը: ՀԱՊ-ում են պահվում նրա «Կնոջ դիմանկար» (1945), «Բնանկար» (1948), «Մայրը երեխաների հետ» (1959) և այլ գործեր:

ԿՈՋՈՅԱՆ Արամ Կարապետի (1889–1964), գեղանկարիչ, գրաֆիկ, մանկավարժ: Հակոբ Կոջոյանի եղբայրը: Հեղինակ է գրքերի ձևավորումների («Սասնա ծռեր» էպոսի համահավաք տեքստի, 1939, Ծ. Թորգոմյանի «Անմար կրակներ», 1953, Վ. Ատրյանի «Արյունոտ քառուղիներով», հ. 1, 2, 1955, 1957, Մ. Ալալոյանի «Աշխեն Սաթյան», 1955, ևն), «Թիֆլիսյան պատկերներ» շարքի, Շ. Ռուսթավելու, Ա. Ծերեթելու, Ի. Ճավճավաձեի դիմանկարների և այլ գործերի:

ԿՈՋՈՅԱՆ Լևոն Հարությունի (1924–2015), գեղանկարիչ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1980): Աշակերտել է Հակոբ *Կոջոյանին*: Հեղինակ է բնանկարների և թեմատիկ պատկերների («Արայի լեռը», 1961, «Աշտարակցի ծերունիները», 1980, «Կեսօր. խոտհունձ», 1986, «Ծաղկած ծիրանենին», 2000, շարք, «Փոթորկից հետո», 2001, շարք, «Հեծյալը», 2003, ևն):

ԿՈՋՈՅԱՆ Հակոբ Կարապետի (1883–1959), գեղանկարիչ: ՀԽՍՀ ժող. նկարիչ (1935): Պրոֆ. (1947): Հայ արդի գրաֆիկայի հիմնադիրը: Հեղինակ է գրաֆիկ. գործերի («Հայկական մունետիկը», 1921, «Սասունցի Դավիթ», 1922), թեմատիկ կոմպոզիցիաների («Փողոց Թավրիզում», «Ճաշարան Թավրիզում», երկուսն էլ՝ 1922), բնապատկերների («Անիի ավերակները», 1919, «Աշունը Երևանում», 1923, «Վաղ գարուն», 1958, ևն), փայտափորագրությունների («Լենինականը երկրաշարժից հետո», 1928, «Զորագյուղ», 1929, ևն), դեկորատիվ-կիրառ. արվ-ի և արդ. գրաֆիկայի գործերի, նկարազարդումների, ձևավորումների (Ե. Չարենցի «Գիրք ճանապարհի», 1933, Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ», 1945, ևն): Գործերին բնորոշ են ինքնատիպ ոճը, հարազատությունը ազգ. մշակույթի ավանդույթներին:

ԿՈՋՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ, **մանկական, Երևանի**, հիմնադրվել է 1958-ին (1959-ից՝ Հակոբ *Կոջոյանի* անվ.): Դասավանդվում են գծանկարչություն, գեղանկարչություն, քանդակագործություն, դեկորատիվ-կիրառ. արվ. և արվ-ի պատմություն: Սովորում են 12–16 տարեկան երեխաները:

ԿՈՋՈՅԱՆԻ ՏՈՒՆ–ԹԱՆԳԱՐԱՆ, գործում է 1973–ից Երևանում՝ Հակոբ *Կոջոյանի* բնակարան-արվեստանոցում (1934): Թանգարանի 4 սրահում ներկայացված են 250–ից ավելի ստեղծագործություններ, նաև անձն. իրեր, նկարչի ձևավորած գրքերի հրտ-ները:

ԿՈՈ, աշխատավճար, հարկադիր աշխ.: Առաջացել է ավատատիր. հարաբերությունների կազմավորման վաղ շրջանում և տարածվել բոլոր երկրներում: Կ. գոյություն է ունեցել նաև Հին Հայաստանում:

ԿՈՈՒԱԶԻՄ. (երկրբ.), ջրի, քամու, սառույցի միջոցով փոխադրվող բեկոր. նյութի ներգործությամբ ապարների տաշման, հղկման շարժընթաց: Կ. անապատներում առաջանում է քամու միջոցով փոխադրվող ավազի, սառցադաշտի տաշտակում՝ սառցափակած գլաքարերի, գետի հունում՝ ջրի օգնությամբ բեկորների գլորման, լ–լանջերում՝ նյութի գրավիտացիոն տեղաշարժի հետևանքով:

ԿՈՈՐԵՆՍ (Correns) Կառլ Էրիխ (1864–1933), գերմանացի բուսաբան: Վերաբացահայտել և վերահաստատել է (1900, Խ. դե Ֆրիզի, Է. Չերմակ–Զեյզենեգի հետ միաժամանակ) *Մենդելի օրենքները*: Հիմնարար աշխ-ները վերաբերում են սեռի գենետիկային, բջջապլազմային ժառանգականությանը:

ԿՈՈՒԵՋՋՈ (Correggio) Անտոնիո (Ալլեգրի, մոտ 1489–1534), իտալացի գեղանկարիչ, Բարձր *Վերածննդի* ներկայացուցիչ: Որմնանկարներում (Պարմի Սան Ջովանի Էվանջելիստա եկեղեցու գմբեթը, 1520–23) կանխորոշել է *բարոկկոյի* տարած. էֆեկտները: Կրոն. («Հովիվների երկրպագությունը» կամ «Գիշեր», մոտ 1530, ևն), դից. («Դանայա», մոտ 1526, ևն) թեմաներով նկարներն աչքի են ընկնում կերպարների վեհությամբ և հուզականությամբ:

ԿՈՈՒԻՆՏԵՍ, ք. Արգենտինայում, նվինգստ Պարանա գետի ափին, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 346 հզ. (2010): Հիմնադրվել է 1588–ին:

ԿՈՈՒԿՈՍ, նավահանգստային քր Կիլիկյան Հայաստանում՝ Միջերկր. ծովի ափին՝ Սելևկիայից 45 *կմ* հս–արլ.: Ունեցել է 2 բերդ՝ Ցամաք. (քաղաքում) և Ծով. (դիմացի կղզյակին): Կ–ում պահպանվել են բնակելի ու հաս. շենքերի, թաղածածկ մատուռների, գմբեթավոր տաճարների, եռանավ բազիլիկների մնացորդներ, Ծով. դղյակի պատին՝ շին. արձանագրություն՝ *Լևոն Բ Մեծ* և *Հեթում Ա* թագավորների անունների հիշատակությամբ: Կ–ի ավերակները թուրքերն անվանում են Քորկոս:

ԿՈՈՐՆԱՅԻ (Kornai) Յանոշ (ծ. 1928), հունգար տնտեսագետ: Աշխ-ները վերաբերում են տնտեսագիտ–յան մեջ մաթ. մեթոդների կիրառմանը, տնտ. կառավարման տեսությանը: 1960–ական թթ–ի վերջին Հունգարիայում տնտ. բարեփոխումների գաղափարախոսներից:

ԿՈՈՐՆԵԼ (Corneille) Պիեռ (1606–1684), ֆրանսիացի դրամատուրգ: Ֆրանսիայի ակադ–ի անդամ (1647–ից): «Սիդ» (բեմ. և հրտ.՝ 1637) ողբերգության հիմքում կրքի և պարտքի ողբերգ. հակադրությունն է, «Հորացիոս» (բեմ.՝ 1640, հրտ.՝ 1641), «Ցիննան կամ Օգոստոսի ողորմածությունը» (բեմ.՝ 1640–41, հրտ.՝ 1643) գործերում պետության՝ որպես կյանքի բարձրագույն օրենքի, թեման է: Հեղինակ է նաև «Բանաստեղծական խառնվածք» (1632) բանաստեղծությունների ժող–ի, «Մեդեա» (բեմ.՝ 1635, հրտ.՝ 1639), «Ռոդոգունա...» (բեմ.՝ 1611–45, հրտ.՝ 1647), «Նիկոմեդ» (բեմ. և հրտ.՝ 1651) և այլ ողբերգությունների:

ԿՈՈՐՆԵԼԻՈՍ Սկիպիոն Պուբլիոս Էմիլիանոս Աֆրիկացի Կրտսեր (Cornelius Publius Scipio Aemilianus Africanus Junior, մ. թ. ա. մոտ 185–129), հռոմեացի զորավար և քաղ. գործիչ: Մ. թ. ա. 147 և 134–ին՝ կոնսուլ: Աչքի է ընկել Պիդնայի ճակատամարտում (մ. թ. ա. 168): Սենատի հրամանով մ. թ. ա. 146–ին ավերել է Կարթագենը:

ԿՈՈՐՆԵԼԻՈՍ (Cornelius) Պետեր ֆոն (1783–1867), գերմանացի գեղանկարիչ: Հեղինակ է պատմ., կրոն. թեմաներով, պաթետիկ տեսարաններով հագեցած գծագրաֆիկ. գործերի՝ Մյունխենի Գլիպտոտեկայի (փորագրած քարերի հավաքածու) որմնանկարների (1820–30):

ԿՈՈՒՆԵԼԻՈՒՍ Վիկտորին Վշեհրդցի (1460–1520), չեխ գրող, լուսավորիչ, իրավաբան: «Ինը գիրք իրավունքի, դատավորների և չեխական հողերի զեմստվոյական գրքերի մասին» աշխ–ը չեխ. իրավունքի հուշարձան է:

ԿՈՈՐՆԵՅՉՈՒԿ Ալեքսանդր Եվդոկիմովիչ (1905–1972), ուկրաինացի դրամատուրգ, հաս. գործիչ: Ուկր. ԽՍՀ (1939), ԽՍՀՄ (1943) ԳԱ–ների ակադ.: Սոց. աշխ. հերոս (1967): Հեղինակ է «Նավախմբի խորտակումը» (1933), «Պլատոն Կրեչետ» (1934), «Բոգդան Խմելնիցկի» (1939), «Ուկրաինայի տափաստաններում» (1941), «Ռազմաճակատ» (1942, հայ.՝ 1943), «Մակար Դուբրավա» (1948), «Բռնչենու պուրակ» (1950), «Սրտի հիշողությունը» (1969) և այլ պիեսների:

Լենինյան միջազգ. (1960), ԽՍՀՄ (1941–43, 1949, 1951), Ուկր. ԽՍՀ (1971) Պետ. մրց–ներ:

ԿՈՈՐՆԵՎ Պյոտր Գեորգիևիչ (1883–1974), ռուս վիրաբույժ, ոսկրահող. տուբերկուլոզի վերաբերյալ ուսմունքի հիմնադիրներից, գիտ. դպրոցի հիմնադիր: ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1944): Լենինյան (1965), ԽՍՀՄ (1952) Պետ. մրց–ներ:

ԿՈՈՐՆԵՏ (ֆրանս.՝ cornett, գերմ.՝ Zink), 1. պղնձե փողավոր երաժշտ. գործիք: Հայտնի է XI դ–ից, տարածվել է XVI–XVIII դդ–ում: Օգտագործվում է օպեր., սիմֆ. և փող. նվագախմբերում: 2. Կ. ա պիստոն (ֆրանս.՝ cornett á pistons), պղնձե փողավոր մունդշտուկավոր երաժշտ. գործիք, ազգակից է *շեփորին*: Տարածվել է XIX դ–ում:

ԿՈՈՐՆԻԼՈՎ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (1862–1925), ռուս պատմաբան: Սահմանադր. ժողովրդավար. կուս–յան (1905–06) հիմնադիրներից: Աշխ–ները վերաբերում են XIX դ–ի Ռուսաստանի պատմությանը, 1861–ի գյուղաց. բարեփոխմանը, Մ. Ա. Բակունինինին:

ԿՈՈՐՆԻԼՈՎ Լավր Գեորգիևիչ (1870–1918), ռուս զորահրամ., Սպիտակ շարժման ռազմ. ղեկ–ներից, գեն. (1917): 1917–ի հուլիս–օգոստ–ին՝ Գերագույն գլխ. հրամ., օգոստ. վերջ–սեպտ. սկզբին կազմակերպել է զինված ընդհարում ժամանակավոր կառ–յան դեմ: Սպիտակ գվարդիականների կամավոր. բանակի (1917–ի դեկտ–1918–ի ապրիլ) կազմակերպիչներից և 1–ին հրամ.: Սպանվել է մարտում:

ԿՈՈՐՆԻԼՈՎ Վլադիմիր Ալեքսեևիչ (1806–1854), ռուս ռազմ. գործիչ, նավատորմի զորահրամ., փոխծովակալ (1852): 1849–ից՝ շտաբի պետ, 1851–ից՝ Սևծով. նավատորմի փաստացի հրամ.: Ղրիմի պատերազմի ժամանակ՝ Սևաստոպոլի պաշտպ–յան ղեկ–ներից: Մահացու վիրավորվել է Մալախովյան բլրի վրա:

ԿՈՈՐՆԻԼՈՎԻ ԽՈՎՈՒԹՅՈՒՆ, *Կոռնիլովի ելույթ*, խռովություն 1917–ի օգոստ. վերջեր–սեպտ–ի սկզբներին՝ Ռուսաստանի ՋՈՒ գերագույն գլխ. հրամ. գեն. Լ. Գ. *Կոռնիլովի* ղեկավարությամբ՝ երկրում ժամանակավոր (մինչև Սահմանադիր ժողովի գումարումը) ռազմ. դիկտատուրա հաստատելու համար: Նպատակը սոց. և այլ ձախ ուժերի ճնշումն էր և պետ. իշխանությունն ամրապնդելը: Ճնշել են Պետրոգրադի կայազորի զորամասերը, Բալթյան նավատորմի ջոկատները և Կարմիր գվարդիան:

ԿՈՈՐՆՈՒԵԼՅԱՆ ՀԱՎԵՐ, *կոռնիշներ*, մսատու հավերի ցեղ: Բուծվել է XIX դ–ի վերջին Մեծ Բրիտանիայում: Աքաղաղների կ. զ.՝ 4, 2–4,8 *կգ*, հավերինը՝ 3,3–3,6 *կգ*: Կ. հ. հիման վրա ստեղծված գծերն օգտագործվում են *բրոյլերների* արտադր–յան համար: ՀՀ–ում թռչնաբուծ. ֆարբրիկաներում բուծվում են Կ. հ–ի ցեղերի գծեր:

ԿՈՈՐՆՈՒՈԼ, (Cornwall), թ–կղզի Մեծ Բրիտանիայի հվ–արմ–ում: Ողողվում է Լա Մանշ և Բրիստոլի նեղուցների ջրերով: Երկ.՝ շուրջ 150 *կմ*, բարձր.՝ մինչև 621 *մ*: Ափերը խիստ կտրտված են: Ծածկված է լայնատերև անտառներով, մացառուտներով և տորֆաճահճուտներով: Նվինգստ–ը՝ Պլիմուտ:

ԿՈՈՒՋԻՈ. (լատ.՝ corrosio – կերամաշում) *մետաղների*, մետաղների քայքայում քիմ., էլեկտրաքիմ. շարժընթացների հետևանքով զարգանում է մետաղի մակերևույթին. նրա և արտաքին միջավայրի փոխազդեցությամբ մետաղները պատվում են օքսիդների, սուլֆիդների, կարբոնատների և այլ միացությունների շերտով: Կ–ի հետևանքով սև մետաղների տարեկան կորուստը մոտ 10 % է: Կ–ի տարածված տեսակ է երկաթի ժանգոտումը (տես *Ժանգ*): Գոյություն ունեն Կ–ից մետաղները պաշտպանելու բազմաթիվ ձևեր (տես *Կոռոզիակայուն նյութեր, Հակակոռոզիոն պատվածքներ*):

Կ–ի են ենթարկվում նաև բետոնը, շին. քարը, փայտը ևն: Պոլիմերների Կ. կոչվում է կազմալուծում:

ԿՈՈՒՊՑԻԱ. (լատ.՝ corruptio – այլասերում, կաշառում, ծախու), հանցագործություն, որով պաշտոնատար անձն իր պաշտոն. դիրքն օգտագործում է անձն. հարստացման նպատակով:

ԿՈՍԱ ԼԵՋՈՒՆ, ՀԱՀ–ի պաշտոն. լեզուներից: Պատկանում է բենուե–կոնգոլեզյան լեզվաընտանիքի բանտու խմբին: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ԿՈՍԵԼ (Kossel), գերմանացի գիտնականներ՝ հայր և որդի: **Ալբրեխտ Կ.** (1853–1927), կենսաքիմիկոս: Աշխ–ները վերաբերում են կորիզային սպիտակուցների (պրոտամիններ և հիստոններ), նուկլեինաթթուների ու նուկլեպրոտեինների քիմիային: Մշակել է սպիտակուցների կառուցվածքի առաջին տեսություններից մեկը: Նոբելյան մրց. (1910):

Վալտեր Կ. (1888–1956), ֆիզքիմիկոս: Իոն. քիմ. կապի առաջին տեսության (1916) հեղինակը: Աշխ–ները վերաբերում են ռենտգեն. ճառագայթների և էլեկտրոնների դիֆրակցիային:

ԿՈՍԵԿԱՆՍ (նոր լատ.՝ cosecans, < complementi secans – լրացման սեկանս), *եռանկյունաչափական ֆունկցիաներից*:

ԿՈՍԻԳԻՆ Ալեքսեյ Նիկոլաևիչ (1904–1980), խորհրդ. պետ. և կուս. գործիչ:

ԽՍՀՄ ՆԽ նախագահ՝ 1964–87–ին: Սոց. աշխ. հերոս (1964, 1974): 1939–40–ին՝ ԽՍՀՄ տեքստիլ արդ–յան ժողկոմ: 1940–53, 1953–56, 1957–60–ին՝ ԽՍՀՄ ԺԿԽ, ՆԽ նախագահի, միաժամանակ, 1941–42–ին՝ Էվակուացիայի խորհրդի (կոմիտեի) նախագահի տեղակալ: 1943–46–ին՝ ՌԽՖՍՀ ԺԿԽ նախագահ: 1948–52 և 1960–80–ին՝ ԽՄԿԿ ԿԿ քաղբյուրոյի (նախագահության) անդամ: 1948–54–ին՝ ԽՍՀՄ ֆինանսների, թեթև արդ–յան ևնի նախարար: 1959–60–ին՝ ԽՍՀՄ Պետպլանի նախագահ, 1960–ից՝ ԽՍՀՄ ՆԽ նախագահի 1–ին տեղակալ: Կ–ի անվան հետ են կապվում 1960–70–ական թթ–ի տնտ. բարեփոխումները:

ԿՈՍԻԳԻՆ Յուրի Ալեքսանդրովիչ (1911–1994), ռուս երկրաբան: ՌԳԱ ակադ. (1991, ԽՍՀՄ ԳԱ ակադ.՝ 1970–ից): Սոց. աշխ. հերոս (1981): Աշխ–ները վերաբերում են ԽՍՀՄ նավթաբեր մարզերի երկրբ–յանը, փորձարար. տեկտոնիկային, երկրբ–յան մեջ էՀՄ–ների կիրառման հարցերին: Լենինյան մրց. (1988):

ԿՈՍԻՆՆԱ (Kossinna) Գուստավ (1858–1931), գերմանացի հնագետ, բանասեր, պատմաբան: Աշխ–ները վերաբերում են հիմնականում Կենտր. և Հս. Եվրոպայի հնագիտ–յանը՝ նոր քարի դարից մինչև հռոմ. ազդեցության դարաշրջանը: Հեղինակ է «հնդկագերմանացիների» գոյության, Եվրոպայում նրանց առաջատար դերի, զբաղեցրած տարածքի նկատմամբ «պատմական» իրավունքի վերաբերյալ ազգայնականությամբ ներծծված տեսական համակարգի, որն օգտագործել են գերմանացի ֆաշիստները:

ԿՈՍԻՆՈՒՍ (նոր լատ.՝ cosinus, < complementi sinus – լրացման սինուս), *եռանկյունաչափական ֆունկցիաներից*:

ԿՈՍԻՆՈՒՍՆԵՐԻ ԹԵՈՐԵՄ, կապ է հաստատում կամայական եռանկյունու a, b, c կողմերի և a ու b կողմերի կազմած անկյան՝ α կոսինուսի միջև՝ $c^2 = a^2 + b^2 - 2ab\cos\alpha$:

ԿՈՍԻՆՈՒՍՈԻԴ, *կոսինուս* ֆունկցիայի՝ y = cosx–ի գրաֆիկը, որը հարթ ալիք. կոր է: Տես *Եռանկյունաչափական ֆունկցիաներ*:

ԿՈՍՄԱՍ ԵՎ ԴԱՄԻԱՆՈՍ, քրիստ. սրբեր, «անարծաթ» բժիշկ–եղբայրներ: Ապրել և գործել են Հռոմում III դ–ի 2–րդ կեսին: Իրենց մատուցած բուժ. ծառայության համար պահանջել են միայն քրիստ. հավատ: Պատմականորեն հավաստվում է, որ նրանք կիլիկեցիներ են եղել:

ԿՈՍՄԱՏՈՎ Լեոնիդ Վասիլևիչ (1900/01–1977), ռուս կինոօպերատոր: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1944): Նկարահանել է «Փարիզի արշալույսը» (1937), «Տառապանքի ուղիներով» եռապատումը («Քույրեր», «Տասնութերորդ տարին», «Մեայլ առավոտ», 1957–59), «Խելագարների դատավարությունը» (1962) և այլ ֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1947, 1949, 1950):

ԿՈՍՄԵՏԻԿԱ (հուն.՝ kosmetice – հարդարման արվ.), **դիմահարդարում**, 1. ուսմունք մարդու արտաքինը լավացնելու միջոցների ու մեթոդների մասին: Տարբերում են բժշկ. և գեղազարդիչ Կ–ներ: 2. Մաշկի, մազերի, ատամների և եղունգների խնամքի միջոցներ (քսուկ, լոսյոն, դիմափոշի, ատամի մածուկ):

ԿՈՍՄՈՊՈԼԻՏՆԵՐ, *աշխարհաբնակներ* (կենսբ.), բույսերի և կենդանիների տեսակներ (ցեղեր, ընտանիքներ ևն), որոնք տարածված են ամբողջ (կամ գրեթե ամբողջ) երկրագնդում: Կ. են հացազգիները, ճնճղուկանմանները: Կ. բնաշխարհիկներ (էնդեմիկների) հակոտնյան են:

«ԿՈՍՄՈՍ», 1. ԵԱՀ սերիաներից մեկի անվանումը: Արձակվել է ԽՍՀՄ–ում 1962–ի մարտի 16–ից: 2. «Կ.» ԵԱՀ–ների արձակման համար ԽՍՀՄ–ում ստեղծված երկաստիճան տանող հրթիռներ:

ԿՈՍՅԱԿՈՎ ԵՂԲԱՅՐՆԵՐ, ռուս ճարտներ: **Վասիլի Անտոնովիչ Կ.** (1862–1921), ռուս. և նորբյուզ. ոճերով Ս. Պետերբուրգում կառուցել է իջևանատներ, եկեղեցիներ: Լավագույն կառույցը Նիկողայոս Սքանչելագործի տաճարն է Կրոնշտադտում (Ծով. տաճար, 1902–13): **Վլադիմիր Անտոնովիչ Կ.** (1866–1922), Ս. Պետերբուրգում և գավառներում կառուցել է արդ. և գղտ. շենքեր: **Գեորգի Անտոնովիչ Կ.** (1872–1925), Ս. Պետերբուրգում կառուցել է Տրոիցյան մանրապատումների թատրոնի շենքը (1911), հեղինակ է «Ճարտարապետական մոտիվներ» գրքի:

ԿՈՍՅԱՆ Սամվել Նորայրի (ծ. 1947), գրող, թարգմանիչ, խմբ.: 2006–12–ին՝ «Գրական թերթ»–ի գլխ. խմբ.: Հեղինակ է «Դեպի տունը երգի» (1981), «Յավի հետքը» (2004), «Կիսաբաց հուշեր» (2008) բանաստեղծությունների, «Գալիս եմ դեպի քեզ» (2003), «Հույսը շարունակելի» պիեսների (2012) ժող–ների:

ՀԳՄ Ս. Զորյանի (1986), Լ. Շանթի (2008) անվ., ԵԱՀԿ 1–ին (2009), ՀԹԳՄ «Արտավազդ» (2016) մրց–ներ:

ԿՈՍՈՎԻՉ Պյոտր Սամսոնովիչ (1862–1915), ռուս ագրոքիմիկոս և հողագետ: Ապացուցել է (1889–91), որ ընդավոր բույսերն ազատ ազոտը յուրացնում են միայն արմատներով:

ԿՈՍՈՎՈ, մասնակի ճանաչված պետություն Եվրոպայի հվ–արլ–ում: Սահմանակից է Սերբիային, Մակեդոնիային, Ալբանիային և Չեռնոգորիային: Տարածքը՝ 10,9 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,8 մլն (2014): Մայրաքաղաքը՝ *Պրիշտինա*: Պետ. լեզուները՝ ալբան. և սերբ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը (ասամբլեա): Բաժանված է 7 վարչ. օկրուգների: Հավատացիալների մեծ մասը սուննի մահմեդական է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով շուրջ 8 հզ. ԱՄՆ դոլար է (2014): Արտահանում է հանքանյութ, մետաղներ, մեքենաներ, տեքստիլ, անասուններ, սննդամթերք ևն, ներմուծում նավթ և նավթամթերք, սննդամթերք, մեքենաներ և սարքավորումներ ևն:

Միջին դարերում Կ. եղել է Ռաշկա պետության, հետագայում՝ Սերբ. թագավորության կենտր. մասը: XV դ–ից մինչև 1913–ը եղել է Օսմ. կայսրության կազմում: Լոնդոնի խաղաղության պայմանագրով (1913) Կ. բաժանվել է Չեռնոգորիայի և Սերբիայի միջև: 1918–ին մտել է Սերբերի, խորվաթների և սլովենների թագավորության (1929–ից՝ Հարավսլավիա) մեջ: 1990–ից, Հարավսլավիայի փլուզման պայմաններում, երկրամասի ալբանացի բնակչությունը զինված պայքար է մղել անկախության համար և 2008–ին հռչակել այն: Ներկայում Կ–ի անկախությունը ճանաչել է ՄԱԿ–ի անդամ 193 երկրներից 109–ը: Սերբիան (նաև ՀՀ–ն) չի ճանաչել Կ–ի անկախությունը:

ԿՈՍՈՎՈՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1389, տեղի է ունեցել հունիսի 15–ին սերբ. ու բոսն. միացյալ բանակի (15–20 հզ., հրամ.՝ սերբ իշխան Լազար) և թուրք. սուլթան Մուրադ I–ի զորքերի (27–30 հզ.) միջև: Թուրքերը հաղթել են, իշխան Լազարին գերել և սպանել են: Կ. ճ–ից հետո Սերբիան դարձել է Օսմ. կայսրության վասալը, 1459–ին մտել նրա կազմի մեջ: Կ. ճ–ում սերբ ռազմիկների հերոսությունն արտացոլվել է սերբ. էպոսում:

ԿՈՍՈՏՏՈ (Cossotto) Ֆյորենցա (ծ. 1935), իտալացի երգչուհի (մեցցո–սոպրանո): Բելկանտոյի ներկայացուցիչ: 1957–ից հանդես է եկել «Լա Սկալա» և այլ նշանավոր օպեր. թատրոններում (Մադալենա, Ազուչենա՝ Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», «Տրուբադուր», Ադալջիզա՝ Վ. Բելլինիի «Նորմա», Կարմենն՝ Ժ. Բիզեի «Կարմեն», ևն):

«ԿՈՍՊԱՍ–ՍԱԼՍԱՏ», նավերի և ինքնաթիռների վրա տեղադրված ռադիոազդալողանների կոօրդինատները (վթարային իրադրությունների դեպքում) հայտնաբերող արբանյակ. համակարգ: «Կոսպասը» համակարգի ռուս. մասն է, «Սարսատը»՝ ԱՄՆ–ում, Կանադայում, Ֆրանսիայում ստեղծված մասը:

ԿՈՍՍԻԳԱ (Cossiga) Ֆրանչեսկո (1928–2010), Իտալիայի նախագահ՝ 1985–92–ին: ՔԴԿ անդամ՝ 1945–85–ին: 1979–80–ին՝ ՆԽ նախագահ:

ԿՈՍՏԱ (Costa) Անդրեա (1851–1910), Իտալիայի անարխիստների առաջնորդ (մինչև 1879–ը), բացահայտորեն խզել է հարաբերությունները նրանց հետ, որից հետո դարձել է Ռոմանիայի նինզ–ի հեղ. սոց. կուս–յան (1881) և Իտալիայի սոց. կուս–յան (1892) հիմնադիրներից:

ԿՈՍՏԱ Լուսիու (1902–1998), բրազիլացի ճարտ., լուսավորիչ, ճարտ–յան պատմաբան և տեսաբան: Հեղինակ է Լուսավորության և առողջապ–յան նախ–յան շենքի (1937–43, Ռիո դե Ժանեյրո), Բրազիլիա ք–ի գլխ. (1957) նախագծերի:

ԿՈՍՏԱ ՌԻԿԱ (Costa Rica), **Կոստա Ռիկայի Հանրապետություն**, պետություն Կենտր. Ամերիկայում: Սահմանակից է Նիկարագուային և Պանամային: Տարածքը՝ 51,1 հզ. *կմ*^{2}, բն.՝ 4,8 մլն (2014): Մայրաքաղաքը՝ *Սան Խոսե*: Պետ. լեզուն՝ իսպ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդր. մարմինը՝ միապալատ ասամբլեան: Բաժանված է 7 վարչ. նինգ–ների: Հավատացիալների մեծ մասը կաթոլիկ է: Անդամակցում է ՄԱԿ–ին, ԱՀԿ–ին, ԱոտՀԿ–ին, Ամերիկ. պետությունների կազմ–յանը, Միջազգ. բարեգործ. հիմնադրամին ևն: Արտահանում է բանան, տավարի միս, սուրճ, հագուստ, ներմուծում քիմիկատներ, սպառող. ապրանքներ, նավթ: Լատ. Ամերիկայի ամենակայուն զարգացող և բարեկեցիկ երկրներից է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 10,7 հզ. ԱՄՆ դոլար է (2013): Դրամ. միավորը՝ կոստառիկյան կոլոն:

Վաղ անցյալում բնակեցված է եղել հնդկացիներով: XVI դ–ի սկզբին գրավել են իսպանացիները: Գաղութատիրությունից ազատագրվել է 1810–26–ին: 1823–ին մտել է Կենտր. Ամերիկայի միացյալ պրովինցիաների կազմի մեջ: Անկախ է 1838–ից: XIX դ–ի վերջից հս–ամերիկ. «Յունայթեդ Ֆրութ Քամփանին» մենաշնորհ է սահմանել բանանի արտադր–յան վրա: 1970–ական թթ–ից իրականացվում են երկրի ազգ. շահերի պաշտպ–յանն ուղղված միջոցառումներ: 1983–ին հռչակել է իր մշտ. անզեն չեզոքությունը:

ԿՈՍՏԱ–ԳԱՎՐԱՍ (Costa–Gavras, Կոնստանտին Գավրաս) (ծ. 1933), ֆրանսիացի

հույն կինոռեժ.: Նկարահանել է «Խոստովանություն» (1970), «Պաշարողական դրություն» (1973), «Խաննա Կ.» (1983), «Երաժշտական զարդատուփ» (1989) և այլ ֆիլմեր: «Օսկար» (1969, 1982), «Ոսկե արջ» (1990), «Կեսար» (2003) մրց-ներ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ, XII դ–ի վերջին քառորդի մանրանկարիչ: Կիլիկիայի մանրանկարչության դպրոցի ներկայացուցիչ: Աշխատել է Սկևռայի գրչատանը: Մանրանկարիչներ *Գրիգոր Մլիճեցու* և Վարդանի հետ նկարազարդել է «Տիգրանակերտի Ավետարանը» (1173, տեղը՝ անհտ): Ներսես Լամբրոնացու և նրա եղբոր՝ Հեթումի համար ծաղկած ձեռագիրը (1193, ձեռ. № 1625, ՎԱոտՄՄ) զարդարված է խորաններով, լուսանցազարդերով և տերուն. պատկերներով («Մեկնություն», «Խաչելություն»):

ԿՈՍՏԱՆԴԻՆ (ծ. թ. անհտ–1263), գունդստաբլ՝ 1210–ից, պայ, թագավորահայր և ավագ պարոն Կիլիկյան Հայաստանում: Լևոն Բ–ն Կ–ին փրկազնել է սելջուկ. թուրքերից և կարգել իր դստեր՝ Զաբելի խնամակալ: Արքայի մահից (1219) հետո Կ. հայկ. գահը պաշտպանել է ապստամբած Վահրամ մարաջախտի և *Ռուբեն* Ռայմունդի ոտնձգություններից, 1221–ից երկրի կառավարումը կենտրոնացրել է իր ձեռքում: 7–ամյա Զաբելին պսակել է Անտիոքի դուքս Բոհեմոնդ IV Միակնանու որդի Ֆիլիպի հետ, 1223–ին նրան գահազրկել է, բանտարկել և կրկին ստանձնել է երկրի կառավարումը: Զաբելին ամուսնացնելով իր 11–ամյա որդի Հեթումի հետ՝ վերջինիս հռչակել է գահաժառանգ: 1226–ին *Հեթում* Ա–ն օծվել է թագավոր: Կ–ի հմուտ քաղյան շնորհիվ հաղթահարվել են ներքին երկպառակությունները:

ԿՈՍՏԱՆԴԻՆ, XIII դ–ի 2–րդ կեսի մանրանկարիչ: Կիլիկիայի մանրանկարչության դպրոցի ներկայացուցիչ: Պահպանվել է զորավար Օշինի պատվերով Կ–ի ծաղկած Ավետարանը (1274, ձեռ. № 740, Նյու Յորք, Մորգանի հավաքածու), որի խորանազարդերում միահյուսված բուս. ու կենդ. մոտիվներն ստեղծում են ինքնատիպ հորինվածքներ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ (ծ. թ. անհտ–1329), Կիլիկյան Հայաստանի գունդստաբլ (սպարապետ)՝ 1320–ից: Ճնշել է ունիթորների ընդվզումները, հաջողությամբ դիմակայել Եգիպտոսի սուլթանության հարձակումներին: Զափհաս դարձած Լևոն Ե–ն ասպարեզից հեռացրել է իր արևմտամետ քաղ–յանն ընդդիմացող Կ–ին, Օշինին և Ալիծ թագուհուն: Կ–ի անունով պահպանվել է 1325–ին գրված եղանակավոր երգոց՝ Ժամագիրք:

ԿՈՍՏԱՆԴԻՆ I ՄԵԾ, **Կոստանդինոս,** Փլավիոս Վալերիոս (Flavius Valerius Constantinus Magnus, մոտ 274–337), Հռոմի կայսր՝ 306–ից: 324–ին *Բյուզանդիոնի* տեղում հիմնադրել է *Կոստանդնուպոլիսը* և 330–ին դարձրել մայրաքաղաք: 325–ին գումարել է *Նիկիայի Ա. տիեզերական ժողովը*: Սահից առաջ քրիստոնեություն է ընդունել: Մոր՝ Հեղինեի հետ սրբադասվել է:

ԿՈՍՏԱՆԴԻՆ V (719–755), Բյուզանդիայի կայսր՝ 741–ից: Իսավրյան հարստությունից: 743–ին ճնշել է մայրաքաղաք. ավազանու ապստամբությունը: Հաղթել է արաբներին (746, 752) և բուլղարներին (Անխիալի մոտ, 763, ևն): Վարել է *պատկերամարտության* քաղ–յուն, դաշնակցել է խալիֆության դեմ ապստամբություն նախապատրաստող *Գրիգոր Մամիկոնյանի* հետ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ VII ԾԻՐԱՆԱԾԻՆ (905–959), Բյուզանդիայի կայսր՝ 913–920–ին և 944–ից: Մակեդոն. (հայկ.) հարստությունից: *Լևոն VI*–ի որդին: Պատերազմել է բուլղարների և արաբների դեմ: Ատրպատականի ամիրա Յուսուֆի Հայաստան արշավանքի ժամանակ Կ. VII Ծ. և պատրիարքն Աշոտ Բ Երկաթին և կաթողիկոս Հովհաննես Ե Դրասխանակերտցուն հրավիրել են Կ. Պոլիս, օգնական զորք տվել Հայոց թագավորին: Հեղինակ է «Կայսրության կառավարման մասին» (43–46 գլուխները վերաբերում են Հայաստանին), «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին», «Բանակաթեմների մասին» երկերի: Նրա օրոք աչքի են ընկել բյուզանդացի հայազգի զորավարներ Բագարատուկը, Մլեհը (Մելիաս), Վարդաս, Լևոն և Նիկեփորոս Փոկասները և ուր.:

ԿՈՍՏԱՆԴԻՆ VIII (960–1028), Բյուզանդիայի կայսր՝ 976–ից՝ եղբոր՝ *Վասիլ II*–ի գահակիցը, 1025–ից՝ միահեծան: Նրա օրոք պեչենեգների դեմ պատերազմներում աչքի է ընկել հայազգի զորավար Գեորգ Թեոդորականը: Ըստ Արիստակես Լաստիվերցու՝ Կ. VIII ձգտել է պահպանել հայոց թագավորությունը՝ հակառակ Հովհաննես–Սմբատի կտակի: Կ. Մակեդոն. (հայկ.) հարստության արական վերջին ներկայացուցիչն է:

ԿՈՍՏԱՆԴԻՆ IX ՄՈՆՈՄԱՔՈՍ (մոտ 1000–1055), Բյուզանդիայի կայսր՝ 1042–ից: Մակեդոն. (հայկ.) հարստությունից: Նրա օրոք ուժեղացել են սելջուկ. թուրքերի արշավանքները, որոնց հետ բյուզ. զորքերն ընդհարվել են *Բասենի ճակատամարտում* (1049): 1054–ին տեղի է ունեցել Արլ. և Արմ. եկեղեցիների բաժանումը: 1045–ին Կ. IX Մ. խաբեությամբ Բյուզանդիա է հրավիրել *Գագիկ Բ*–ին և վերացրել *Բագրատունիների* թագավորությունը, ստեղծել է «Անիի և Իբերիայի» կատապանությունը:

ԿՈՍՏԱՆԴԻՆ XI ՊԱԼԵՈԼՈԳՈՍ (1405–1453), Բյուզանդիայի վերջին կայսրը՝ 1449–ից: Պալեոլոգոսների հարստությունից: 1452–ին հաստատել է կաթոլիկ եկեղեցու հետ միության համաձայնագիրը: 1453–ի ապրիլի սկզբին սուլթան Մուհամմեդ II–ը (Մեհմեդ) մեծ զորքով պաշարել է Կ. Պոլիսը: Կ. XI Պ. մոտ 2 ամիս պաշտպանել է քաղաքը և զոհվել մարտում:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա. Ռուբինյան (ծ. թ. անհտ–1100), Կիլիկիայի հայոց իշխան՝ 1095–ից: Սելջուկ. թուրքերից ու բյուզանդացիներից ազատագրել է Կիլիկիայի մի շարք գվո–ներ: Անտիոքի, Եդեսիայի և Երուսաղեմի գրավման ժամանակ (1098–99) խաչակիր ասպետներին օգնելու համար ստացել է դքսի և մարկիզի տիտղոսներ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա. ԲԱՐՋՐԲԵՐԴՑԻ, **Մավոռիանցի** (1180–ական թթ.–1267), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1221–ից: Վարել է երկրի ամրապնդման և հզորացման, Հայ եկեղեցու միաբանության, ինքնուրույնության քաղ–յուն, բացել է նոր դպրոցներ, հիմնադրել միաբանություններ, գրչության կենտրոններ ևն:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Բ, Կիլիկիայի հայոց թագավոր՝ 1298–99–ին: Գահակալել է եղբորը՝ բռնակալ Սմբատին տապալելուց հետո: Ավագ եղբոր՝ *Հեթում Բ*–ի դեմ կռվում պարտվելով՝ ձերբակալվել է և աքսորվել Կոստանդնուպոլիս, որտեղ և մահացել է: Կ. Բ–ի անունով և պատկերով հատվել են դրամներ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Բ ԿԱՏՈՒԿԵՑԻ (մոտ 1210–ական թթ.–1293–ից հետո), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1286–89–ին: Ընդդիմացել է հռոմ. եկեղեցու՝ հայ ժողդ–ին կաթոլիկության պարտադրելու ձգտումներին, որի պատճառով *Հեթում Բ*–ն և *Գրիգոր Է Ապաւարզեցին* 1289–ի վերջին Սսում մանակի ժողով են գումարել և նրան գահընկեց արել ու բանտ նետել: 1293–ին Հեթում Բ–ի հրամանով ազատվել է ու նշանակվել Սկևռա վանքի (Լամբրոնին մերձ) առաջնորդ: Պահպանվել է 1293–ի նրա արձանագրություն–հիշատակարանը Սկևռայի «Սրբարան» կոչվող մասնատուփի վրա:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ, **Գվիդոն** (կամ Կի) **Լուսինյան** (ծ. թ. անհտ–1345), Կիլիկիայի հայոց թագավոր՝ 1343–ից: Կիպրոսի թագավոր Ամորի Լուսինյանի և *Զաբելի* որդին: 1343–ին 300 ֆրանկ զինվորների ուղեկցությամբ ժամանել է Կիլիկիա և հայկ. ծեսով օծվել թագավոր: Կառավարումը հանձնել է ունիթորներին ու ֆրանկներին, հալածել հայրենասեր իշխաններին, բռնագրավել նրանց կալվածքները: Ապստամբած հայրենասիր. ուժերն Օշին Բակուրանի գլխավորությամբ սրի են քաշել Կ. Գ–ին և նրա ֆրանկ պալատականներին:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ ԿԵՍԱՐԱՑԻ, **Հերձվածող** (մոտ 1240–ական թթ.–1322), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1307–ից: Ընդունել է հայադավանությանը հակառակ որոշումներ, որոնք իրականացնելու ժամանակ հանդիպել է հայոց Արլ. վրդ–ների և այլոց ընդդիմությանը: Նրա դեմ ընդվզել է նաև Երուսաղեմի հայոց պատրիարքությունը՝ 1331–ին կապերը խզելով Հայոց կաթողիկոսության հետ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ (ծ. թ. անհտ–1363), Կիլիկիայի հայոց թագավոր՝ 1345–ից: 1346–ին դիմակայել է մամլուքների և թուրքմենների հարձակմանը, ազատագրել Կապան բերդը: 1347–ի ամռանը ջախջախել է Կիլիկիա ներխուժած Եգիպտոսի սուլթանության առաջապահ գնդերը: Հոռդոսի Սբ Հովհաննես ասպետ. ուխտի օգնությամբ ջախջախել է Հալեպի ամիրայի ասպատակիչ զորամասը և հասել մինչև Ալեքսանդրետի ծոց: Դատապարտել է պապականության վարքագիծը:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ, **Դրազարկցի** (ծ. թ. անհտ–1326), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1323–ից: Մասնակցել է 1307–ի Սսի և 1317–ի Ադանայի եկեղեց. ժողովներին: 1323–ին 15–ամյա հաշտություն է կնքել Եգիպտոսի Նասր սուլթանի հետ, որը որոշակի հարկի դիմաց պարտավորվել է վերաշինել Կիլիկիայում իր ավերած բերդերը:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Ե (ծ. թ. անհտ–1373), Կիլիկիայի հայոց թագավոր՝ 1365–ից: Ապարդյուն փորձել է հաշտվել Եգիպտոսի հետ: Ունիթորները դավադրաբար սպանել են նրան և գահը հանձնել *Լևոն Զ* Լուսինյանին:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Ե ՍՍԵՑԻ (ծ. թ. անհտ–1374), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1372–ից: Նրա աթոռակալության սկզբին ավելի են հզորացել Կիլիկիայի Լուսինյանները, իսկ Հեթումյան արքայատոհմն անկում է ապրել: Հիշատակվում է Կիպրոս մեկնած այն պատգամավորության կազմում, որը Կիպրոսի Պետրոս II թագավորին խնդրելու էր Լևոն Զ–իվանորդի Լուսինյանին (*Լևոն Զ*) կարգելու Կիլիկիայի թագավոր:

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՑԻ (մոտ 1250–ական թթ.–1314–ի և1328–ի միջև), տաղեր–

գու: Նրան է վերագրվում 27 քերթված, որտեղ առաջինն է հայ աշխարհիկ քնարերգության մեջ երգել բնությունն ու սերը, կնոջ արտաքին գեղեցկությունն ու ներաշխարհը: Լույս են տեսել Կ. Ե–ու «Կոստանդին Երզնկացի, ԺԴ դարու ժողովրդական բանաստեղծ եւ յիւր քերթուածները» (1905, ուսումնասիր. և հրտ.՝ Մ. Պոտուրյանի), «Տաղեր» (1962, աշխատասիր.՝ Ա. Սրապյանի), «Լոյսն առաւօտուն: Տաղեր» (1982, կազմ., առաջաբ., ծնթգր.՝ Լ. Մկրտչյանի) ժող–ները:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Զ ՎԱՀԿԱՅԻ (ծ. թ. անհտ–1439), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1430–ից: Մերժել է Հայ և Լատին եկեղեցիների միության առաջարկություններով հռոմ. եկեղեցուց ստացված գրերը: Նրա օրոք ավելի է սրվել կաթողիկոս. աթոռը Սսից Էջմիածին տեղափոխելու հարցը: Ըստ *Թովմա Մեծոփեցու*՝ թունավորել են:

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ (ծ. թ. անհտ–1250), թագադիր իշխան Կիլիկյան Հայաստանում՝ 1226–ից: Գործակցելով Իկոնիայի սուլթանության հետ՝ ապստամբել է *Հեթում Ա*–ի դեմ: 1245–ին սելջուկ–թուրքերի գլուխ անցած՝ ավերել է երկրի մի շարք քաղաքներ, պաշարել Տարսոնը, սակայն պարտվել է և փակվել Լամբրոնում: 1250–ին հալածական Կ. Լ., իբրև դավաճան, սրախողխող է արվել:

ԿՈՍՏԱՆԴԻՆ ՋՈՒՂԱՅԵՑԻ, **Կոստանդ Ջուղայեցի**, XVII դ–ի մանկավարժ, վրդ.: Կ. Ջ–ու «Աշխարհաժողով գիրք» (1687) թվաբ–յան դասագրքում զետեղված են շուրջ 130 տարաբնույթ առաջադրանքներ՝ լուծված նախապես տրված կանոններով. կիրառված են ամբողջ. և կոտորակ. թվեր, հայկ. և հնդ. թվանշաններ ևն:

ԿՈՍՏԱՆԴԻՆ ՍԻԼՎԱՆ, **Սիղվանոս** (ծ. թ. անհտ–681/684), Պավլիկյան աղանդավոր. շարժման առաջնորդ՝ 657–ից: Գործել է Բարձր Հայքի Սանանաղի գվռում: 654–ին ընդունել է Պողոս առաքյալի աշակերտ Սիլվանի (Սիղվանոսի) անունը: 657–ին տեղափոխվել է Բյուզ. կայսրության Կոլոնիայի Կիբոսա ամրոցը (Փոքր Հայքի տարածքում), կազմակերպել պավլիկյան համայնք: Սպանել են բյուզանդացի զինվորները:

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՎ, Գարուշ Սերգեյի (1921–1944), գվարդիայի ավագ սերժանտ, հականատանկ. հրանոթի հնշանառու: ԽՄ հերոս (1945, հետմահու): 1944–ի նոյեմբ. 4–ին մարտիկների հետ հրկիզել է 3 տանկ և ոչնչացրել 40 զինվոր ու սպա:

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ Գալուստ (1840–1898), փիլ., հաս. գործիչ, լուսավորիչ, բնագետ: «Հաշտենից և Վասպուրական» երիտասարդ. ընկ–յան հիմնադիր–ղեկ., ընկ–յան «Միություն» պարբ–ի խմբ.: Փարիզի արևելագետների ֆրանս. ընկ–յան իսկական անդամ: «Օրիան» («Orient») մատենաշարով ֆրանս. հրատարակել է հայագիտ–ազգագր. նյութեր: 1858–ին «Հասարակաց թանգարան» վերնագրով տպագրել է 16 գրքույկ («Գանգաբանություն», «Քիմիաբանություն», «Կենդանաբանություն», «Աստղաբանություն» ևն): Կ–ի փիլ. հայացքները լավագույնս արտահայտված են «Մէթոտի վրայ» (1878) աշխ–յան մեջ: Մերժել է մտահայեցող. մեթոդը, միակ ճշմարիտը համարել գիտականը: Հաս. առաջադիմության իմաստը հանգեցրել է գիտ–յան և լուսավորության տարածմանը:

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ Էմմա Աշոտի (1934–2015), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1999): Աշխ–ները վերաբերում են Գարեգին Սրվանձտյանցի և Մկրտիչ Խրիմյանի հասքաղ. գործունեությանը, արևմտահայ մամուլին, մշակութ., հաս–քաղ. կյանքին ևն:

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ Լևոն Իվանի (ծ. 1932), վնասվածքաբան–օրթոպեդ: Բժշկ. գիտ. դ–ր (1971), պրոֆ. (1972): Աշխ–ները վերաբերում են դիակային հյուսվածքների պատրաստման, պահածոյման, «կրաշինդրոմի» ժամանակ բուժօգնության և վերջույթի վերապատվաստման դեպքում տեղային վերակենդանացման հարցերին: Ներդրել է բլթեֆոպլաստիկան ոսկրային պակասը լրացնելու համար: Կուզբասի վնասվածքաբանների և օրթոպեդների ընկ–յան նախագահ (1971–78):

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ Հարութ (Հարություն, 1909–1979), բանաստեղծ: 1927–ից՝ Փարիզում, 1950–ից՝ Պրովանսի Մոնֆեռա գ–ում: Հեղինակ է «Օրերի իմաստութիւնը» (1935), «Բանաստեղծութեամբ...» (1974) բանաստեղծությունների ժող–ների: Կ–ի լեզուն արևելահայ–ի, արևմտահայ–ի և գրաբարի որոշ ձևերի զուգորդման օրինակ է:

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՊՈԼԻՍ, **Կ. Պոլիս, Բյուզանդիոն, *Սպամբուլ***, Հռոմ. կայսրության (330–ից), Բյուզանդիայի (395–1453) և Օսմ. կայսրության (1453) մայրաքաղաքը: Հիմնադրել է ***Կոստանդին I Մեծը*** 324–ին:

Կ–ի հայ գաղութի պատմությունը սկիզբ է առնում Բյուզ. կայսրության կազմավորման շրջանից (IV դ.): 572–ին ստեղծվել է հայոց առանձին կրոն. համայնք: IX–XI դդ–ում, երբ Բյուզանդիայի գահին տիրել են հայազգի կայսրերը [Մակեդոն. (Հայկ.) հարստություն], հայերի թիվն ստվարացել է: 1461–ին Կ–ում հայոց պատրիարքության հաստատումից հետո ազգ. կյանքն ավելի կազմակերպված է դարձել: 1478–ին Կ–ում եղել է 1000 տուն հայ: Հետագայում հայերի թիվը բազմապատկվել է Սեբաստիայից, Կեսարիայից, Ակնից, Կիլիկիայից, Արլ. Հայաստանից և Պարսկաստանից տեղափոխվածների հաշվին: XIX դ–ի սկզբին Կ–ում բնակվել է 150 հզ., 1880–ական թթ–ին՝ 250 հզ. հայ: 1880–ական թթ–ին, Աբդուլ Համիդ II սուլթանի օրոք, արգելվել է հայերի մուտքը Կ., իսկ 1895–96–ին կազմակերպվել են հայերի զանգված. կոտորածներ (զոհվել է շուրջ 16 հզ. հայ): ԱՀՊ–ից առաջ (1914) Կ–ում բնակվել է ավելի քան 160 հզ. հայ, որոնց մի մասը, այդ թվում՝ շուրջ 800 մտավորական, դարձել է Մեծ եղեռնի զոհ:

Համայնքի հաս. կյանքը կազմակերպել են ազգ., մշակութ. (XIX դ–ի վերջին և XX դ–ի սկզբին գործել են 350 մշակութ. ընկ–ներ), բարեգործ. միություններն ու ընկ–ներ: XIX դ–ի վերջ–XX դ–ի սկզբին Կ–ում գործել են նաև հայ ազգ. կուս–յուններ: 1844–ին ստեղծվել է հայերի ներքին գործերը կարգավորող մարմին՝ ԱԺ; 1847–ին՝ Ազգ. հոգևոր և գերագույն ժողովներ: XIX դ–ի վերջին Կ–ում գործել են շուրջ 40 թաղ. և 50 մասնավոր դպրոցներ, 1914–ին՝ 64 հայկ. դպրոցներ՝ շուրջ 25 հզ. աշակերտով:

Հայ մեծատուններին էին վստահված թուրք. արքունիքի պետ. առանձին պաշտոնները (վարել են ժառանգաբար)՝ ոսկերչապետությունը և դրամահատությունը (Տյուզյաններ), վառոդապետությունը (Տատյաններ), ճարտարապետությունը (Պալյաններ) ևն:

Կ–ում է ձևավորվել ու զարգացել արևմտահայ մանկավարժությունը՝ Հ. Հինդլյան, Ռ. Պերպերյան, Հ. Ասատուր և ուր.:

Կ. հայ տպագրության խոշոր կենտրոններից էր (տես *Կոստանդնուպոլսի հայկական տպագրություն*):

Կ–ում է զարգացել արևմտահայ գր. լեզուն, որով ստեղծված գրկ–ը ոչ միայն հայ, այլև համաշխ. գրկ–ը հարստացրել է արժեքավոր գործերով:

1850–ական թթ–ից սկսած՝ Ն. Ռուսինյանի, Գ. Օտյանի, Հ. Շիշմանյանի (Ծերենց), Մ. Մամուրյանի և այլոց ջանքերով սկզբնավորվել է այսպես կոչված Զարթոնքի շրջանի գրկ–ը, որի հիմնաքարերը Ծերենցի պատմահայրենասիր. վեպերն էին, իսկ գագաթնակետը՝ Ղ. Ալիշանի, Մ. Պեշիկթաշլյանի, Պ. Դուրյանի, Թ. Թերզյանի, Մ. Աճեմյանի ստեղծագործությունները: Զարթոնքի սերնդի ականավոր ներկայացուցիչներից էին երգիծաբան Հ. Պարոնյանը և Ե. Տեմիրճիպաշյանը:

Դ. Վարուժանի, Սիամանթոյի, Մ. Մեծարենցի, Ռ. Սևակի, Վ. Թեքեյանի և այլ բանաստեղծների ստեղծագործություններով տաղաչափ. գրկ–ը հասել է բարձրագույն վերելքի: Իրապաշտ. արձակը զարգացրել ու հարստացրել են Ա. Արփիարյանը, Երուխանը և ուր.: Մեծ եղեռնից հրաշքով փրկվածները շարունակել են ստեղծագործել. Ա. Չոպանյանը՝ Փարիզում, Հ. Սիրունին՝ Ռումինիայում, Հ. Մաճուրին և Զոհականը՝ Կ. Պոլսում, Հ. Օշականը՝ Երուսաղեմում, Վ. Թեքեյանը՝ Լիբանանում:

Կ–ի ճարտ. կերպարի կազմավորման գործում զգալի ներդրում են ունեցել հայ ճարտ–ները: XVI դ–ում հայտնի էր Սինանը: Հետագայում, շուրջ երեք դար, Կ–ում գործել են Պալյանների ճարտ. տոհմի ներկայացուցիչները: Նրանց հետ են աշխատել ճարտ. Հ. Սերվերյանը, Մ. Խալֆան, Ջ. Թաշճյանը:

Հայկ. ազգ., ինչպես և թուրք. երաժշտ. մշակույթի զարգացմանը մեծապես նպաստել են Կ–ի հայ երաժիշտները: Հայկ. մասնագիտացված երաժշտության հիմնադիրներից են Հ. Լիմոնճյանը, Հ. Չերչյանը, Գ. Երանյանը, Ե. Տնտեսյանը, Ա. Հովհաննիսյանը, Հ. Մյուհենտիսյանը, Ռ. Փափազյանը, Ն. Թաշճյանը, Ս. Խանճյանը, Գ. Կոստանդյանը և ուր.: Անգնահատելի է այդ գործում Տ. Չուխաճյանի և Կոմիտասի ներդրումը: Գործել են «Քնար հայկական» (1862) երաժշտ. ընկ–ը, Սինանյան նվագախումբը (1861–96), «Արամյան թատրոնի» (1846–66, դիրիժոր՝ Կ. Փափազյան), սիմֆոնիկ (1923–1940, դիրիժոր՝ Վ. Մյուհենտիսյան) և այլ նվագախմբեր: Գ. Քելեկյանը հիմնադրել է «Գրեգոր» առաջին ջազ–նվագախումբը: XIX դ–ի 2–րդ կես–XX դ–ի սկզբին բացառիկ երևույթ էր կին կոմպոզիտորների՝ Արմավենի Գյոլքեկյանի, Լյուսի Հազարապետյանի, Էբրուհի Սիրաքյանի գործունեությունը:

1846–ին Հ. Գասպարյանի ջանքերով բացվել է առաջին պրոֆեսիոնալ Արամյան թատրոնը: 1856–ին Օրթաքյոյ (Միջագյուղ) թաղամասի հայ–կաթոլիկ. վարժարանում թատրոն է բացել Մ. Պեշիկթաշլյանը, 1855–ին Սկյուտար թաղամասում (Պ. Օտյանի տանը)՝ Գ. Փափազյանը, 1857–ից Նաում եղբայրների նորակառույց թատրոնում գործել է Ս. Հեքիմյանը: 1858–ից հիմնադրվել է «Հայկազյան դերասանական ընկերությունը»: 1861–ին բացվել է Արևելյան թատրոնը, 1868–ին՝ Վարդովյան թատրոնը (ղեկ.՝ Հ. Վարդովյան): Վերջինս եղել է Կ–ի ամենահաստատուն թատեր. կազմ–յունը: Պ.

Մաղաքյանի և Հ. Վարդովյանի խմբերում մասնագիտ. վարպետություն են ձեռք բերել պոլսահայ բեմի հիմն. դերասաններ Գարագաշյան քույրերը, Պ. Ադամյանը, Ազնիվ Հրաչյան, Սարի Նվարդը, Թ. Ֆասուլաճյանը, Մ. Մնակյանը, Ս. Պենկլյանը, Դ. Թրյանցը, Գ. Ռշտունին, Սիրանույշը, Աստղիկը և ուր.: 1878-ին Ս. Պենկլյանը կազմակերպել է պրոֆեսիոնալ օպերետ. խումբ, որը գործել է մինչև 1890-ական թթ.: 1885-ին Մ. Մնակյանը հիմնել է Օսմանյան դրամատիկ թատերախումբը, որը շարունակությունն էր Արևելյան և Վարդովյան թատրոնների: 1908-ին՝ Կ-ում առաջին անգամ, Օթելլո է (Շեքսպիրի «Օթելլո») խաղացել Վ. Փափազյանը: 1918-ին հիմնադրվել է Պոլսո հայ դրամատիկ թատերախումբը (Ա. Մաղաթյան, Մ. և Ա. Քանաններ, Տ. Նշանյան, Ե. Թոլայան, Ս. Ալիքսանյան, Հ. Փափազյան, Ս. Մաքսուտյան, Հ. Ստեփանյան, Հ. Ներսիսյան և ուր): Կ-ում օպերետ. ներկայացումներ են բեմադրել Սուրաբյան ամուսինները, Ա. Երամյանը, Գ. Ավետյանը և ուր.: 1921-ին Կ-ում հիմնադրվել է Հայ արվեստի տուն (5 մասնաճյուղով), որի նախագահն էր Ե. Օտյանը, ապա՝ Վ. Թեքեյանը: Հետագա տարիներին Կ-ում հայ թատրոնն անկում է ապրել: 1930–60-ական թթ-ին Կ-ում գործել է Երիտասարդաց թատերախումբը: Տես նաև ***Կոստանդնուպոլսի գրչության կենտրոն, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն, Սրամբույլ:***

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, նախամաշտոցյան շրջանի հայ մշակույթի կենտրոն: Պահպանված ինագույն ձեռագիրը (909, գրիչ՝ Թուեթայել, Մնձղ., ձեռ. № 6202) մագաղաթե Ավետարանն է: Կ. գ. կ-ում թարգմանվել են Դիոնիսիոս Արիոպագացու, Գրիգոր Նյուսացու, Կյուրեղ Երուսաղեմացու, Որոգինեսի երկերից: X դ-ում թարգմանչ. գործունեությամբ հայտնի էր Հովսեփ Բժիշկ Կոստանդնուպոլսեցին: Մեծ թվով ընդօրինակություններ արվել են հատկապես XV–XVII դդ-ում: Կ. գ. կ-ից պահպանված շուրջ 1000 գրչագրերի կեսից ավելին Մնձղ-ում է:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Կ. Պոլսում հայկ. առաջին տպարանը հիմնադրել է ***Աբգար Թոխաթեցին*** 1567-ին (գործել է մինչև 1569-ը): 1677-ին տպարան է հիմնադրել Երևմիա Չելեպի ***Քոմուրճյանը*** (գործել է 1 տարի): 1691–1720-ին գործել է կաթոլիկ հայրերի տպարանը (գաղտնի): Առավել երկար գործել են ***Գրիգոր Մարզվանեցու*** (1684–1734), ***Ասլվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու*** (1699–1777, 1748-ից տնօրինել է որդին՝ Զնչին Հովհաննեսը) տպարանները: XVIII դ-ի սկզբից մինչև 70-ական թթ. Կ. Պոլսում գործել են նաև Սարգիս Դպիրի (1703–04), Պետրոս Լատինացու (1704–12), Մարտիրոս Սարգսյանի (1721–52), Բարսեղ և Հակոբ Սեբաստացիների (1735–77), Աբրահամ Դպիրի (1737–46), Գաբրիել Բարսեղյանի (1745–50), Ստեփանոս Պողոսյանի (1750–92), ***Արապյանների*** (1750–1880-ական թթ., 3 սերունդ) տպարանները: Կ. հ. տ. նկատելի վերելք է ապրել XIX դ-ում և XX դ-ի սկզբին. գործել են շուրջ 130 հայկ. տպարաններ՝ Մատթեոս Դպիրի (1800–25), Հովհաննես ***Մյուհենդիսյանի*** (1840–73), Հարություն Մինասյանի (1842–80), «Արևելյան համազգային» (1844–65), Կարապետ ***Ութուճյանի*** (1852–1884), Հարություն Փափազյանի (1853–1872), Թադեոս Տիվիթճյանի (1850–76), Ռուբեն Քյուրքճյանի (1856–77), Հովսեփ Գավաֆյանի (1860–92), Շահնիկ ***Արամյանի*** (1865–79), Սամուել Պարտիզպանյանի (1873–1912), Կարապետ Պիպերյանի (1878–1900), Գարեգին Պաղտատլյանի (1880–1912), Հակոբ Աստուրյանի (1894–1912), Սերովբե ***Վիչենյանի*** (1880–1912), Նշան Պերպերյանի (1882–1907), ***«Արևելք»***-ի (1884–1912), Հովհաննես Թոլայանի (1884–1912), Օննիկ Բարսեղյանի (1888–1912), Գայսերյանների (1888–1912), Մաթևոսյանների (1889–1912), Թագվոր Սանճագճյանի (1891–1912), Ռոգոս Սագայանի (1892–1912), ***«Բիւզանդիոն»***-ի (1896–1912), Օննիկ ***Արզումանի*** (1908–1912) և այլ տպարաններ: Հայ. գրքեր են տպագրվել նաև շուրջ 20 եվրոպ. և թուրք. տպարաններում: Կ. հ. տ. զգալի ավանդ է ունեցել թուրք և այլ ժողդ-ների տպագր. գործի ստեղծման մեջ: 1832-ին Կ. Պոլսում է լույս տեսել Թուրքիայում առաջին հայ պարբ. «***Լրոյ գիր***»-ը: Ցայսօր Կ. Պոլսում հրատարակվել են ավելի քան 400 անուն պարբ-ներ: Ներկայում լույս են տեսնում «***Ակօս***» (1996-ից), «***Ժամանակ***» (1908-ից), «***Սարմաբա***» (1940-ից), «***Սուրբ Փրկիչ***» (1949-ից), «Լրաբեր» (1996-ից) և այլ պարբ-ներ, որոնց խմբագրությունները գրաղվում են նաև գրահրատարակչ. գործունեությամբ, գործում են ***«Արաս»*** և այլ տպագրատներ:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆ, ***Պատրիարքություն հայոց Թուրքիո***, ՀԱԵ նվիրապետ. աթոռներից: Հիմնադրվել է 1461-ին: Աթոռանիստը (1641-ից)՝ Գում Գափուի Սբ Աստվածածին Մայր եկեղեցի (Ստամբուլ): Առաջին պատրիարքն է Հովակիմ եպս. Պրուսացին (1461–78), նստավայրը՝ Կ. Պոլսի Սամաթիայի Սբ Գևորգ եկեղեցի: Պատրիարքները տնօրինել են Օսմ. կայսրության հայության կրթությունն ու լուսավորությունը, տպագրության գործը, բարեգործ. և մշակութ. հաստատությունները, պետության ու համայնքի օգտին հավաքել մասնակի հարկեր: Սկզբն. շրջանում նրանց նշանակել է սուլթանը, ներկայում ընտրվում են համայնքների ներկայացուցիչների պատգամավոր. ժողովում: 1461-ից ցարդ պատրիարք. աթոռը գրաղեցրել է 85 հոգևորական: Արևմտահայությունը զարթոնք է ապրել Հովհաննես Կոլոտ Բաղիշեցի, Հակոբ Նալյան, Զաքարիա Փոքուզյան Կաղզվանցի պատրիարքների պաշտոնավարության ընթացքում: Կ. հ. պ-յան գործունեությունն առավել կանոնակարգվել է 1860-ի ***Ազգային սահմանադրության*** հռչակումից հետո: Մեծ եղեռնից հետո կորցրել է իր իրավունքներն ու դերը: Հրատարակել է ***«Շողակաթ»*** հանդեսը (1952–77, 1991), ներկայում լույս է ընծայում տեղեկատվ. «Լրաբեր» պարբ-ը (1996-ից): Կ. հ. պ-յան պատրիարք Մեսրոպ արք. Մութաֆյանի տևական հիվանդության պատճառով 2012-ին տեղապահ է ընտրվել Արամ արք. Աթեշյանը:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ, 1. **1700**, Ռուսաստանի և Օսմ. կայսրության միջև, կնքվել է հուլիսի 14-ին: Ամրապնդել է 1695–96-ի Ազովյան արշավանքների արդյունքները, ապահովել է Թուրքիայի չեզոքությունը Հս. պատերազմի (1700–21) առաջին տարիներին: Ռուսաստանին են անցել Ազովը, Մերձդնեպրի թուրք. բերդերը, վերացվել են Ռուսաստանի՝ Ղրիմի խանին վճարվող ամենամյա հարկերը: Կ. հ. պ. վերանայվել է Ռուսաստանի՝ Պրուտյան անհաջող արշավանքից (1711) հետո: 2. **1879**, ամրապնդել է 1878-ի Սան Ստեֆանոյի հաշտության այն պայմանները, որոնք չեղյալ չեն հայտարարվել կամ փոփոխվել են 1878-ի Բեռլինի դաշնագրով: Որոշվել է Թուրքիայի ռազմատուգանքի չափը, նախատեսվել է Օսմ. կայսրությունում բալկան. ժողդ-ների ազատագր. շարժման մասնակիցների համաներումը: Սկսել են գործել ռուս-թուրք. նախկին համաձայնագրերի՝ առևտրի և Թուրքիայում ռուս. հպատակների դրության վերաբերյալ կետերը:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ «ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ» 1720, Ռուսաստանի և Օսմ. կայսրության միջև, որով հաստատվել են 1712-ի Կոստանդնուպոլսի համաձայնագրի հիմն. պայմանները՝ Պետրոս I-ի խախտած Պրուտի (1711) և Ադրիանուպոլսի (1713) հաշտության պայմանագրերը թարմացնելու մասին: Ամրագրել է ռուս-թուրք սահմանը (1713), ռուս և թուրք վաճառականների փոխադարձ իրավունքները՝ ազատ առևտրի վերաբերյալ, վերացրել Երուսաղեմ գնացող ռուս ուխտագնացներից հարկվող վճարները: Ազով ք-ն անցել է Թուրքիային, 2 պետություններին արգելվել է պաշտպ. շինություններ կառուցել Ազով և Ռուսաստանի Չերկասի ք-ների միջակայքում: Ռուսաստանը պարտավորվել է 2 ամսում իր զորքերը դուրս բերել Ռեչ Պոսպոլիտայից: Կ. «Հ. հ.»-յան շնորհիվ Ռուսաստանը հաջողությամբ է ավարտել 1700–21-ի Հս. պատերազմը:

ԿՈՍՏԱՆԴՈՎ, Լեոնիդ Արկադիի (Արտաշեսի, 1915–1984), խորհրդ. պետ. գործիչ: 1953–64-ին՝ ԽՍՀՄ քիմ. արդ-յան ազոտային արտադր-յան վարչության պետ, Քիմ. խորհրդի պետկոմի, Պետպլանի կոմիտեի նախագահ, 1965–80-ին՝ ԽՍՀՄ քիմ. արդ-յան նախարար, 1980–84-ին՝ ԽՍՀՄ ՆԽ փոխնախագահ: Ղեկավարել է ֆուգասային ռումբերի արտադրամասի շին-ը, մշակել ու իրականացրել է եռացող շերտում ցածրորակ ածուխների գազացման տեխնոլոգիա (ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1951), կազմակերպել ծանր ջրի արտադր. թողարկումը (Լենինյան մրց.՝ 1960):

«Ոսկե Մերկուրի» միջազգ. մրց. (1978):

ԿՈՍՏԱՆՅԱՆ, դերասանների ընտանիք: **Միքայել Ալեքսանդրի** (Աղաջանի) **Կ.** (Մելիք-Ալավերդյան, 1889–1954): Լևոն ***Ալավերդյանի*** եղբայրը: 1921-ին Պարսկաստանում ստեղծել է ***Կոստանյան թատերախումբը***, խաղացել է Կորբադո (Պ. Ջակոմետտիի «Ոճրագործի ընտանիքը»), Օթելլո (Վ. Շեքսպիրի «Օթելլո»), բեմադրել Շիրվանզադեի «Նամուս», Լ. Շանթի «Հին աստվածներ» և այլ գործեր: Կինը՝ **Մարգարիտ Կ.** (1887–1955): Դերերից են՝ Իշխանուհի (Լ. Շանթի «Հին աստվածներ»), Օֆելյա (Վ. Շեքսպիրի «Համլետ») ևն: Զավակները՝ **Էմմա Կ.** (1905–մ. թ. անհտ), պարուհի: **Վոլոդյա Կ.** (1907–մ. թ. անհտ.), դերասան, **Ասյա Կ.** (1909–1993), դերասանուհի, երգչուհի, պարուհի:

ԿՈՍՏԱՆՅԱՆ Ալբերտ Հովհաննեսի (1927–1996), մարզ. հոգեբան: Հոգեբ. գիտ. դ-ր (1970), պրոֆ. (1972): Աշխ-ները վերա-

բերում են ֆիզ. դաստիարակության տեսության և մեթոդաբանության հարցերին:

ԿՈՍՏԱՆԴԱՆ Արշակ Սիմոնի (1865–1920), երգիչ (քնարադրամատիկ. տենոր): Հանդես է եկել Ռուսաստանի օպեր. թատրոններում, 1903–ից՝ Սոլոդովնիկովի օպեր. խմբում (Դուքս, Ալֆրեդ՝ Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», «Տրավիատա», Ֆաուստ՝ Շ. Գունոյի «Ֆաուստ», Գերման՝ Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա», ևն):

ԿՈՍՏԱՆՅԱՆ Արտակ Երանոսի (ծ. 1942), քիմիկոս-անօրգանիկ: Տեխ. գիտ. դ-ր (1982), պրոֆ. (1986): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (2008): Աշակել և հետազոտել է նոր՝ բարձր արդյունավետ լուծահանիչային և ռեակցիոն ապարատներ: Որոշ մշակումներ ներդրվել են արդ-յան մեջ: ԽՍՀՄ ՆԽ (1983) և ՌԴ Կառ-յան (2005) մրց-ներ, Էդվարդ Չուի մեդալ (2010, Լիոն, Ֆրանսիա):

ԿՈՍՏԱՆՅԱՆ Կարապետ Հովսեփի (1853–1920), հայագետ, մանկավարժ: 1891–94-ին՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի, 1894–99 և 1902–05-ին՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի, 1911–20-ին՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանի տեսուչ: Հեղինակ է «Հիւսուած բանից Նախնի պատմագրաց հայոց», «Հիւսուած հայոց մարզպանների պատմութեան» (երկուսն էլ՝ 1877), «Հայոց հեթանոսական կրօնը» (1879), «Գրաբառի խոնարհումը» (1880), «Հայոց վանքերը» (1886), «Շիրակի լեգենդներից եւ ժողովրդական կեանքից» (1896) և այլ աշխ-ների: Կազմել է «Ծաղկաքաղ արձակ եւ չափածոյ բանից ի պէտս վարժարանաց» (մաս 1–3, 1881), «Ծաղկաքաղ գրաբար ուսանելու համար» (1881) և այլ դասագրքեր, «Վիմական տարեգիր» (1913), «Յոհաննէս Թլկուրանցին եւ իւր տաղերը» (1892), «Գրիգորիս Աղթամարցին եւ իւր տաղերը» (1898) ժող-ները ևն:

ԿՈՍՏԱՆՅԱՆ Կոստան Արտավազդի (1926–2007), ճարտարագետ-տեխնոլոգ-ֆիզքիմիկոս: Տեխ. գիտ. դ-ր (1963), պրոֆ. (1976): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1977–ից): Եղել է Էլեկտրավակուում. ապակու ԳՀԻ-ի Երևանի մասնաճյուղի տնօրեն (1969–86): Կ-ի ղեկավարությամբ մշակվել և արտադր-յան մեջ ներդրվել են ուղղակի և անուղղակի տաքացման գարնիսաժային էլ. վառարաններ՝ տարբեր հալունության ապակիների եփման համար: ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան:

ԿՈՍՏԱՆՅԱՆ Հայկազ Արշակի (1897–1938), խորհրդ. կուս. և պետ. գործիչ: 1928–30-ին՝ ՀԿԿ ԿԿ 1-ին, 1931–34-ին՝ Պրոֆինտերնի (Մոսկվա) պատ. քարտուղար: Անհիմն բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ԿՈՍՏԱՆՅԱՆ Մուրադ Կոստանի (1902–1989), դերասան: ՀԽՍՀ ժող. արտիստ (1956): Լենինականի դրամատիկ. թատրոնի հիմնադիրներից: 1930-ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասան: Աչքի է ընկել բնութագր. և կատակերգ. դերերով (Խայի՝ Գ. Սունդուկյանի «Խաթաբալա», Աչաստլիվցև՝ Ա. Ն. Օստրովսկու «Անտառ», Սարգիս՝ Ժ. Հարությունյանի «Դազաղը գնում է պատերազմ», ևն): Նկարահանվել է կինոյում («Երջանկության մեխանիկա», 1982, «Հարսնացու հյուսիսից», 1975, երկուսն էլ՝ Հայֆիլմ, ևն):

ԿՈՍՏԱՆՅԱՆ Ռադիկ Բենիկի (ծ. 1940), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1992): ՀՀ ԳԱԱ ակադ. (2014, թղթ. անդամ՝ 2006–ից): ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադ. քարտուղար (2016–ից): ՌԲՆԳԱ անդամ (1988): Աշխ-ները վերաբերում են սուտակ. լազերների և օպտիկ. քվանտ. ուժեղացուցիչների բնութագրերին, դրանց ճառագայթման և ռեզոնանս. միջավայրերի փոխազդեցության երևույթներին:

ՀՀ նախագահի (2009), ՌԳԱԱ Մ. Պրոխորովի անվ. (2009) մրց-ներ:

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ, գործել է 1921–50-ական թթ-ին Պարսկաստանում: Բեմադրվել են Շիրվանզադեի «Նամուս», «Չար ոգի», Լ. Շանթի «Հին աստվածներ», Վ. Շեքսպիրի «Օթելլո», Հ. Իբսենի «Ուրվականներ» և այլ գործեր: Թատերախմբի հիմքը ***Կոստանյան*** դերասան. ընտանիքն էր:

ԿՈՍՏԱՌԻԿԱՑԻՆԵՐ (ինքնանվանումը՝ costarricenses, costarriqueños, ticos) ժողդ, Կոստա Ռիկայի հիմն. բնակչությունը: Ընդհ. թիվը՝ 3,5 մլն (2010): Խոսում են իսպ-ի կոստա-ռիկայան բարբառով: Հավատացիալները հիմնականում կաթոլիկ են, սևամորթներն ու մուլատները՝ բողոքական:

ԿՈՍՏԱՍ II, **Կոստանդին III** (մոտ 629–668), Բյուզանդիայի կայսր՝ 641–ից: Պատերազմել է արաբների դեմ: Զգտելով Հայաստանը պահել իր գերիշխանության տակ՝ 646–ին Հայոց իշխան է նշանակել ոմն Թովմայի, որը ձերբակալել է Թեոդորոս Ռշտունուն և ուղարկել Կ. Պոլիս, սակայն Կ. II-ը, երկյուղելով հայերի դժգոհությունից, Թեոդորոս Ռշտունուն վերականգնել է պաշտոնում: Հայ-արաբ. պայմանագրի կնքումից (652) հետո բյուզ. զորքերը ներխուժել են (653) Հայաստան, սակայն պարտվել են հայկ. բանակից: Սպանվել է Սիրակուսեում:

ԿՈՍՏԵԼԻՉ (Kostelić) Յանիցա (ծ. 1982), խորվաթ մարզուհի (լեռնադահուկ. սպորտ): Օլիմպ. ձմեռ. խաղերի քառակի (2002, 2006), աշխարհի հնգակի (2003, 2005), չեմպիոնուհի, աշխարհի գավաթի (2001, 2003, 2006) հաղթող: Եղբայրը՝ **Յավիցա Կ.** (ծ. 1979), աշխարհի չեմպիոն (2003) և օլիմպ. ձմեռ. խաղերի եռակի արծաթե մեդալակիր (2006, 2010)՝ լեռնադահուկ. սպորտի տարբեր ձևերում:

ԿՈՍՏԵՆԿՈ Միխայիլ Պոլինկտովիչ (1889–1976), ռուս էլեկտրատեխնիկ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1953): Սոց. աշխ. հերոս (1969): Աշխ-ները վերաբերում են էլ. մեքենաներին, փոփոխ. հոսանքի էլ. քարշուժին, էներգահամակարգերի մողելավորմանը:

ԽՍՀՄ Պետ. (1949, 1951), Լենինյան (1958) մրց-ներ:

ԿՈՍՏԵՆՅՈՒԿ Ալեքսանդրա Կոնստանտինովնա (ծ. 1984), ռուս մարզուհի (շախմատիստուհի): Միջազգ. գրոսմայստեր կանանց (1998) և տղամարդկանց (2006) գծով: Եվրոպայի (2004) և ՌԴ (2005) չեմպիոնուհի: 2008-ին դարձել է շախմատի աշխարհի 12-րդ չեմպիոնուհին (2008–10): Հեղինակ է «Ինչպես դառնալ գրոսմայստեր 14 տարեկանում» գրքի:

ԿՈՍՏԻԿՅԱՆ Գնունի Կյուրեղի (1912–1989), անասնաբույծ: Գղտ. գիտ. դ-ր (1972), պրոֆ. (1973): Հրաչյա ***Կոստիկյանի*** եղբայրը: Աշխ-ները վերաբերում են գղտ. կենդանիների կերակրման և արոտավայրերի արդյունավետ օգտագործման հարցերին:

ԿՈՍՏԻԿՅԱՆ Հրաչյա Կյուրեղի (1915–1989), գրադարանագետ, մատենագետ: Մանանակավարժ. գիտ. թեկնածու (1965): ՀԽՍՀ վաստ. գրադարանավար (1961): Գնունի ***Կոստիկյանի*** եղբայրը: 1938–ից աշխատել է ՀԱԳ-ում (ընդմիջումներով), 1961–ից՝ փոխտնօրեն:

ԿՈՍՏԻԿՈՎ Վալերի Իվանովիչ (ծ. 1937), ռուս ֆիզքիմիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1997): Ուսումնասիրությունները վերաբերում են դժվարահալ հեղուկ մետաղների՝ պինդ նյութերի հետ փոխազդեցությանը, ածխածին կարբիդային և ածխածին ածխածնային բաղադրյալ նյութերի ստացման տեխնոլոգիային: ԽՍՀՄ (1981), ՌԴ Կառ-յան (1999) Պետ. մրց-ներ:

ԿՈՍՏԻՉԵՎ Պավել Անդրեևիչ (1845–1895), ռուս ագրոնոմ և հողագետ, ժամանակակից հողագիտ-յան հիմնադիրներից: Հեղինակ է «Ռուսաստանի սևահողային մարզերի հողերը: Նրանց ծագումը, կազմությունը և հատկությունները» (1886), «Հողագիտություն» (մաս 1–3, 1886–87) հիմնարար աշխ-ների: Ռուսաստանում 1-ին ագրոքիմ. լաբորատորիայի կազմակերպիչն է (1878):

ԿՈՍՏՅԱԿՈՎ Ալեքսանդր Նիկոլաևիչ (1887–1957), ռուս. մելիորատոր, Ռուսաստանում հողբարելավման գիտ-յան հիմնադիրը: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1933), ՀամԳԳԱ ակադ. (1935): Մշակել է գղտ. բույսերի ոռոգման ռեժիմներ ու ջրման տեխնիկա, ջրի կորստի դեմ պայքարի եղանակներ ևն:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1951, 1952):

ԿՈՍՏՅՈՒԿ Պլատոն Գրիգորևիչ (1924–2010), ուկրաինացի ֆիզիոլոգ: Ուկրաինայի ԳԱ ակադ. (1969), ՌԳԱ ակադ. (1991, ԽՍՀՄ ԳԱ ակադ.՝ 1974–ից): Սոց. աշխ. հերոս (1984): Աշխ-ները վերաբերում են նյարդ. համակարգի գործունեության բջջ. մեխանիզմներին: ԽՍՀՄ-ում առաջինն է կիրառել միկրոէլեկտրոդները՝ նյարդ. բջջի ուսումնասիրման համար:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1983):

ԿՈՍՏՅՈՒԿ Վալերի Վիկտորովիչ (ծ. 1940), ուկրաինացի մեխանիկոս: ՌԳԱ ակադ. (1997, թղթ. անդամ՝ 1991–ից): Աշխ-ները վերաբերում են գազատուրբին. կայանքներին: ԽՍՀՄ (1985), ՌԽՖՍՀ (1990) Պետ. մրց-ներ:

ԿՈՍՏՅՈՒՇԿՈ (Kosciuszko) Թադեուշ (1746–1817), 1794-ի լեհ. ազգ-ազատագր. ապստամբության ղեկ.: Հս. Ամերիկայի 1775–83-ի անկախության պատերազմի մասնակից: 1789–ից՝ լեհ. բանակում: 1794-ին գլխավորել է լեհ. զորքերը: Վիրավորվել է մարտում և գերվել ռուս. զորքերից: Մինչև 1796-ը բանտարկվել է Պետրոպավլովյան ամրոցում: 1796-ին Ռուսաստանի կայսր Պավել I-ը 12 հզ. լեհերի հետ ազատել է կալանքից:

ԿՈՍՏՇԵՎՄԿԻ (Kostrzewski) Յուզեֆ (1885–1969), լեհ հնագետ: Լեհաստանի ԳԱ ակադ. (1951): Քննադատել է Գ. ***Տոխինա-յի*** և գերմ. ազգայնական տեսությունները: Սլավոնների՝ վիսլա-օդերյան նախահայրենիքի տեսության հեղինակներից է: Պոզնանում լեհ. համալսարանի (1919) հիմնադիրներից: Ստեղծել է հնագիտ-յան և հին պատմության պոզնանյան դպրոցը:

ԿՈՍՏՈԼԵՎՄԿԻ Իգոր Սամվելիչ (ծ. 1948), ռուս դերասան: ՌԴ ժող. արտիստ (1995): 1973–ից՝ Մոսկվայի Վ. Մայակովսկու անվ. թատրոնի դերասան (Քինգ՝ Վ. Կ. Առոյի «Տեսեք՝ ով է եկել»), Գեորգ IV թագավոր (Գ. Ի. Գորինի «Քին IV»), Իվան Կարամազով («Կարամազովներ»՝ ըստ Ֆ. Մ. Դոստոևսկու) ևն: Մասնակցել է Էսքիլեսի «Օրեսթեա» ներկայացմանը (ռեժ.՝ Պ. Շտայն, Մոսկվա): Նկարահանվել է կինոյում («Դյութիչ երջանկության աստ-

ղը», «Քառակուսի», «Լուսապսակ»: ՌԴ Պետ. մրց. (1999):

ԿՈՍՏՈՄԱՐՈՎ Վիտալի Գրիգորևիչ (ծ. 1930), ռուս լեզվաբան: ԽՍՀՄ ՄԳԱ ակադ. (1985, նախազահ՝ 1990–91-ին): ՌԴ գիտ. վաստ. գործիչ (1995): Հետազոտել է միջազգ. հաղորդակցության լեզուների տարածվածության խնդիրները: Հեղինակ է լեզվաբ. աշխարհագրությանը, ռուս-ի՝ որպես միջազգ. լեզվի, դասավանդմանը վերաբերող աշխ-ների:

ԽՍՀՄ Պետ. (1979), ՌԴ նախազահի (2003), Ի. Ա. Բունինի անվ. գր. (2010) մրց-ներ:

ԿՈՍՏՈՎ Իվան Նիկոլով (1913–2004), բուլղար հանքաբան և բյուրեղագետ: ՌԳԱ արտ. անդամ (1991, ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ՝ 1982-ից): Աշխ-ները վերաբերում են միներալների կարգաբանությանը, ձևաբանությանը և բյուրեղաքիմիային: Առաջարկել է միներալների ինքնօրինակ դասակարգման եղանակ («Միներալոգիա»):

ԿՈՍՏՐՈՄԱ, ք. ՌԴ-ում, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 270,5 հզ. (2009): Հիմնադրվել է XII դ-ում, առաջին անգամ հիշատակվել է 1213-ին:

ԿՈՍՏՐՈՄԱՅԻ ՄԱՐԶ, ՌԴ-ում (Կենտր. դաշն. օկրուգ): Տարածքը՝ 60,2 հզ. *կմ*^{2}, բն.՝ 692,3 հզ. (2009): Ունի 24 շրջան, 12 քաղաք, 7 քտա: Վարչ. կենտրոնը՝ *Կոստրոմա:* Կազմավորվել է 1944-ին: Մակերևույթը բլրոտ է (բարձր.՝ մինչև 229 *մ*): Գլխ. գետը՝ *Վոլգա:*

ԿՈՍՏՐՈՄԱՅԻ ՏԱՎԱՐԻ ՑԵՂ, խեզ-ի կաթնամսատու ցեղ: Բուծվել է XX դ-ի 1-ին կեսին *Կոստրոմայի մարզի* տնտ-յուններում: Ցուլերի կ. զ.՝ 900–1100 *կգ*, կովերինը՝ 550–600 *կգ*: Կաթնատվությունը՝ 4,5–6,0 հզ. *կգ*, կաթի յուղայնությունը՝ 3,8–4,0 %:

ԿՈՍԻՑԻՈՒՇԿՈ (Kosciusko), լ. Ավստրալ. Ալպերում, մայրցամաքի ամենաբարձր (2230 *մ*) գագաթը: Տարածված են սառցադաշտ. լանդշաֆտները, ալպ. և մերձալպ. բուսականությունը, հասարակած. անտառները: Գործում է ազգ. պարկ: Կոչվել է Թ. *Կոսցյուշկոյի* անունով: Զարգացած են ձմեռ. մարզաձևերը:

ԿՈՎԱԼ (Կովալյով) Մարիան Վիկտորովիչ (1907–1971), ռուս կոմպոզիտոր: Լիտվ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1954), ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1969): 1948–52-ին՝ «Խորհրդային երաժշտություն» ամսագրի գլխ. խմբ., 1956–62-ին՝ Մ. Ե. Պյատնիցկու անվ. ռուս. ժող. երգչախմբի գեղ. ղեկ.: Հեղինակ է «Եմելյան Պուգաչյով» (1942, 2-րդ խմբ.՝ 1659), «Սևաստոպոլցիներ» (1946) ևն, նաև մանկ. «Գայլը և յոթ այծիկները» (1939, 3-րդ խմբ.՝ 1966) օպերաների, «Ակյուշա» (1964) բալետի, «Չկալով» (1942) և այլ կանտատների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943):

ԿՈՎԱԼԵԶՈՒԻ (Scolopendrium), արալիազգիների ընտանիքի պտերների ցեղ: Հայտնի է մի քանի տեսակ՝ Հս. կիսագնդում: Աճում է խոնավ ժայռերի վրա, անտառներում: Դեղազարդիչ բույս է:

ԿՈՎԱԼԵՆԿՈ Վյաչեսլավ Իվանովիչ (1936–2010), ռուս երկրաբան: ՌԳԱ ակադ. (2000): Աշխ-ները վերաբերում են հանքակիր մագմատիկ. ապարների պետրոլոգիային (ապարաբանություն), Կենտր. Ասիայի մետաղածոյացման հարցերին: ՌԴ Պետ. մրց. (1997):

ԿՈՎԱԼԵՆԿՈՎ Վալերի Իվանովիչ (1884–1960), ստորջրյա կապի, ավտոմատիկայի, տելեմեխանիկայի ոլորտի գիտնական: ՌԽՖՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1935): ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1939), ճարտարագիտա-տեխ. ծառայության գեն-մայոր (1943): 1909-ին հայտնագործել է հեռախոս. լարային վերահաղորդումը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941):

ԿՈՎԱԼԵՆՑ ԿԱՊ, քիմ. կապի տեսակ. իրականանում է կապ առաջացնող 2 ատոմների համար ընդհ. էլեկտրոնների զույգով: Մոլ-ում ատոմները կարող են կապված լինել միակի (H–H, CH_3–CH_3), կրկնակի (CH_2=CH_2) և եռակի (N≡N, HC≡CH) Կ. կ-ով: Էլեկտրաբացասականությամբ տարբերվող ատոմների միջև առաջանում է բևեռ. Կ. կ. (H–Cl, CH_3–Cl):

ԿՈՎԱԼԵՎՍԿԱՅԱ Սոֆյա Վասիլևնա (1850–1891), ռուս մաթեմատիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ առաջին կին թղթ. անդամը (1889): Վ. Օ. *Կովալևսկու* կինը, Ա. Վ. Ժակլերի քույրը: Աշխ-ները վերաբերում են մաթ. վերլուծությանը, մեխանիկային և աստղագիտ-յանը (Սատուռնի օղակների ձևերի մասին): Հեղինակ է նաև գեղ. գործերի:

ԿՈՎԱԼԵՎՍԿԻ Ալեքսանդր Օնուֆրիևիչ (1840–1901), ռուս. կենսաբան, համեմատ. սաղմնաբանության և ֆիզիոլոգիայի, փորձարար. և էվոլյուցիոն հյուսվածաբանության հիմնադիրներից: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1890): Վ. Օ. *Կովալևսկու* եղբայրը: Հաստատել է ողնաշարավորների և անողնաշարների զարգացման ընդհ. օրինաչափությունները:

ԿՈՎԱԼԵՎՍԿԻ Եգոր Պետրովիչ (1809–1868), ռուս. պետ. գործիչ, ճանապարհորդ, պատմաբան, գրող: Գեն-լեյտ. (1861): Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. (1856), պատվ. (1857) անդամ: 1847–48-ին առաջիններից էր, որ ցույց է տվել Սպիտակ Նեղոսի ակունքների ճիշտ աշխարհագր. տեղադրությունը: ԱԳՆ Ասիայի դեպարտամենտի տնօրեն (1856–61), սենատոր (1861-ից): Հեղինակ է «Կոմս Բլուդովը և իր ժամանակը» (1866), «Թուրքիայի դեմ պատերազմը և արևմտյան տերությունների պառակտումը 1853 և 1854 թթ-ին» (1868) աշխ-ների:

ԿՈՎԱԼԵՎՍԿԻ Մաքսիմ Մաքսիմովիչ (1851–1916), ռուս. պատմաբան, իրավաբան, սոցիոլոգ: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1914), իսկական պետ. խորհրդական (1915/16): Ռուսաստանում լիբերալիզմի խոշորագույն ներկայացուցիչներից, սահմանադր. միապետության կողմնակից: Նպաստել է Ռուսաստանում մասնականության վերածննդին: «Եվրոպայի լրաբեր» (1909–16) ամսագրի հրտ.: Հեղինակ է համայնքների, XVIII դ-ի ֆրանս. հեղ-յան մասին, արմ-եվրոպ. ֆեոդալիզմի խնդիրներին վերաբերող աշխ-ների, հուշագրությունների (ամբողջությամբ հրտ.՝ 2005): Սոցիոլոգիայի էվոլյուցիայի տեսության՝ «գենետիկական սոցիոլոգիայի» ստեղծողն է:

ԿՈՎԱԼԵՎՍԿԻ (Kowalewski) Նիկոլայ Օսիպովիչ (1840–1891), լեհ ֆիզիոլոգ: Կազանի ֆիզիոլոգների դպրոցի հիմնադիրը: Օ. Մ. *Կովալևսկու* որդին: Ուսումնասիրել է սիրտանոթ. և շնչառ. համակարգերի ռեֆլեքսային կարգավորման մեխանիզմները:

ԿՈՎԱԼԵՎՍԿԻ Պավել Օսիպովիչ (1843–1903), ռուս. գեղանկարիչ: Օ. Մ. *Կովալևսկու* որդին: Ստեղծել է ժանրային գործեր և մարտանկարներ («Թեմին շրջանցելը», 1885, ևն):

ԿՈՎԱԼԵՎՍԿԻ Վլադիմիր Օնուֆրիևիչ (1842–1883), ռուս. կենդանաբան, էվոլյուցիոն հնէաբանության հիմնադիրը Ռուսաստանում: Ա. Օ. *Կովալևսկու* եղբայրը: Չ. Դարվինի ուսմունքի հետևորդը և քարոզիչը: Հեղինակ է սմբակավոր կենդանիների զարգացման պատմության վերաբերյալ դաս. աշխ-ների: Հնէաբան-ներից առաջինն է կիրառել էվոլյուցիոն ուսմունքը՝ ողնաշարավորների ֆիլոգենեզի խնդիրները լուծելիս:

ԿՈՎԱԼԵՎՍԿԻ Օսիպ Միխայլովիչ (Յոզեֆ, 1800/01–1878), լեհ մոնղոլագետ, տիբեթագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1837), ակադ. (1847): Մոնղոլագիտ-յան հիմնադիրը: Պ. Օ. *Կովալևսկու* հայրը: Հեղինակ է բուդդիզմին վերաբերող աշխ-ների: Հետազոտել է մոնղոլ ժողդ-ի պատմությունը, լեզուները, գրկ-ը, ազգագրությունը: Կազմել է նաև բառարաններ («Մոնղոլ-ֆրանս-ռուսերեն բառարան», հ. 1–3): Դեմիդովյան մրց. (1846):

ԿՈՎԱԼՅՈՆՈԿ Վլադիմիր Վասիլևիչ (ծ. 1942), ռուս տիեզերագնաց-օդաչու: Ավիացիայի գեն-գնդ.: ԽՄ հերոս (1978, 1981): Կատարել է 3 տիեզ. թռիչքներ (1977, 1978, 1981)՝ որպես տիեզերանավի հրամ. (ընդհ. ժամանակը՝ 216 օր 9 *ժ* 9 *ր*): 1 անգամ դուրս է եկել բաց տիեզերք (առանձին թռիչքի ժամանակ)՝ 7 *ժ* 7 *ր* տևողությամբ:

ԿՈՎԱԼՅՈՎ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (1915–1991), ուկրաինացի քանդ.: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1979): Հաստոց. և մոնումենտալ դիմաքանդակների վարպետ («Կոմպոզիտոր Պ. Ի. Չայկովսկի», 1945, «Ակադեմիկոս Վ. Պ. Ֆիլատով», 1952, Ն. Վ. Լիսենկոյի հուշարձանը Կիևում, 1965):

ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

ԿՈՎԱԼՅՈՎ Նիկոլայ Նիկոլաևիչ (1908–2003), ռուս նավաշինարար: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1953): Սոց. աշխ. հերոս (1957): Աշխ-ները վերաբերում են մեխանիկային և տուրբինաշինությանը: Հիդրոտուրբինների գլխ. կոնստրուկտոր:

ԽՍՀՄ Պետ. (1946, 1950), Լենինյան (1959) մրց-ներ:

ԿՈՎԱԼՅՈՎ Սերգեյ Նիկիտովիչ (1919–2011), նավաշինության բնագավառի ռուս գիտնական և կոնստրուկտոր: ՌԳԱ ակադ. (1991, ԽՍՀՄ ԳԱ ակադ.՝ 1981-ից): Սոց. աշխ. հերոս (1963, 1974): Լենինյան (1965), ԽՍՀՄ (1978), ՌԴ (2006) Պետ. մրց-ներ:

ԿՈՎԱԼՅՈՎԱ Գալինա Ալեքսանդրովնա (1932–1995), ռուս երգչուհի (կոլորատուր. սոպրանո), մանկավարժ: ԽՍՀՄ ժող. արտիստ (1974): 1960-ից՝ Լենինգրադի ՕՔԹ-ի մեներգչուհի (Վիոլետտա, Ջիլդա՝ Ջ. Վերդիի «Տրավիատա», «Ռիգոլետտո», Անտոնիդա՝ Մ. Ի. Գլինկայի «Իվան Սուսանին», ևն):

Երիտասարդ օպեր. մեներգիչների միջազգ. մրցույթի 2-րդ (1961, Սոֆիա), Մեներգիչների միջազգ. մրցույթի 1-ին (1962, Թուլուզ), ՌԽՖՍՀ Պետ. (1978) մրց-ներ:

ԿՈՎԱԼՉՈՒԿ Բորիս Միխայլովիչ (ծ. 1940), ռուս ֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (1992): Աշխ-ները վերաբերում են ուժեղահոսանք իմպուլս. էլեկտրոնիկային:

ԽՍՀՄ (1981), ՌԴ (1998) Պետ. մրց-ներ:

ԿՈՎԱԼՍԿԻ (Kowalski) Մարիան Ալբերտովիչ (Վոյտեխովիչ, 1821–1884), լեհ աստղագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1862): Աշխ-ները վերաբերում են Նեպտունի շարժման տեսությանը, կրկնակի աստղերի ուղեծրերի որոշման մեթոդին: Առաջինն է մաթեմատիկորեն ձևակերպել *Գալակտիկայի* պտտման խնդիրը:

ԿՈՎԱՆԿՈ Ալեքսանդր Մատվեևիչ (1856–1919), ռուս ռազմ. գործիչ, գեն–լեյտ. (1913): Ռուսաստանում ձեռնարկել է օդապարիկների (նաև ղեկավարվող) արտադրյուն և կապովի օդապարիկների մարտ. կիրառումը:

ԿՈՎԱՉ (Kovacs) Անդրաշ (ծ. 1925), հունգար կինոռեժ.: Նկարահանել է «Դժվար մարդիկ» (1964), «Յուրտ օրեր» («Շուրջկալ հունվարին», 1966), «Պատեր» («Լասլո Ամբրուշի գործը», 1968), «Ձիաբուծարանի տերը» (1978), «Ժամանակավոր դրախտ» (1981), «Մարդու համար դժվար է Կալիֆոռնիայում» (1996) և այլ ֆիլմեր:

ԿՈՎԱՉ (Kovář) Միխալ (1930–2016), Սլովակիայի Հանրապետության նախագահ՝ 1993–98–ին, 1992–ից՝ Չեխիայի և Սլովակիայի Դաշն. Հանրապետության նախագահ: 1991–95–ին՝ Ազգ. կուս–յան փոխնախագահ:

ԿՈՎԱՐ, երկաթի (հիմքը) մագնիս. համաձուլվածքը կոբալտի (18 %) և նիկելի (29 %) հետ: Օժտված է ընդարձակման ցածր ջերմաստիճան. գործակցով: Ապակու և խեցեղենի հետ առաջացնում է վակուումակիպ զոդք: Պատրաստում են էլեկտրավակուում. սարքերի պատյաններ և հոսանքի ներանցիչներ:

ԿՈՎԱՐՍԿԻ (Kowarski) Ֆելիցիան (1890–1948), լեհ գեղանկարիչ: Հեղինակ է չքավորության թեմաներով ընդհանրացված արտահայտիչ նկարների («Օտարականներ», 1930), հեղ. թեմաներով էպիկ., խստաշունչ կտավների («Ժողովրդավարության մարտիկները», 1948, շարք):

ԿՈՎԱՅՈՐԵՆ, խլածաղկազգիների ընտանիքի կիսամակաբույծ խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 30 տեսակ: Առանձին տեսակների սերմեր թունավոր են գղտ. կենդանիների համար:

ԿՈՎԵԼԻՆ, սուլֆիդների դասի միներալ՝ CuS: Առաջացնում է երկնագույնից սև զանգվածներ: Կարծր.՝ 2–2,5, խտ.՝ 4,6–4,7 *գ/սմ*^{3}: Ջրաջերմ. առաջնային Կ. քիչ է հանդիպում (ՀՀ–ում՝ Տանձուտի հանքավայրում): Մեծ կուտակումների դեպքում պղնձի հանքանյութ է:

ԿՈՎԵՐԿՈՏ (անգլ.՝ covercoat), բրդե կամ կիսաբրդե խիտ գործվածք: Կ–ից կարում են վերարկու և կոստյում: Մշակում են նաև բամբակե Կ. (հիմնականում՝ անջրանցիկ վերարկու կարելու համար):

ԿՈՎԶԱՆ Բորիս Իվանովիչ (1922–1985), խորհրդ. ռազմ. օդաչու: ԽՄ հերոս (1943): Գնդ. (1958): ՀՄՊ–ի ժամանակ եղել է կործանիչ ավիացիայում, գնդի հրամ–ի տեղակալ. օդ. մարտերում կատարել է 4 խոյահարում:

«ԿՈՎԻ ԿԱՏԱՂՈՒԹՅՈՒՆ», **սպունգանման էնցեֆալոպաթիա**, խեչ–ների և մարդու պրիոնային վարակիչ հիվանդություն: Հարուցվում է հատուկ սպիտակուցով (պրիոնով), բնորոշվում է գլխուղեղի նյութում սպունգանման փոփոխություններով: Փոխանցվում է սննդամթերքների միջոցով (հիվանդ կովերի միսն օգտագործելուց):

ԿՈՎԿԱՍ, աշխարհագր. տարածաշրջան Եվրասիայում՝ Արևելաեվրոպ. հարթավայրից հվ՝ Եվրոպայի ու Ասիայի սահմանին: Ընդգրկում է Կովկաս. լ–ները և հարակից հարթավայրերը՝ Ռուսաստանի, Վրաստանի, Հվ. Օսիայի, Աբխազիայի, ՀՀ–ի, ԼՂՀ–ի և Ադրբեջանի տարածքները: Արմ–ում ձգվում է մինչև Սև ծով, արլ–ում՝ մինչև Կասպից ծով: Հս–ում Կ–ի սահմանները հասնում են մինչև Կումա–Մանիչի իջվածք, Ազովի ծով ու Կերչի նեղուց: Հվ–ում Վրաստանին, ՀՀ–ին, ԼՂՀ–ին և Ադրբեջանին սահմանակցում են Իրանը և Թուրքիան: Տարածքը՝ 440 հզ. *կմ*^{2}: Բաժանվում է Հս. Կ–ի, Նախակովկասի և Այսրկովկասի: Ըստ ժամանակակից քաղ. աշխարհագրության (քաղ. վարչատարածք. բաժանում)՝ Կ–ի տարածքը բաժանված է Հս. Կովկասի (Ռուսաստան) և մասամբ՝ Այսրկովկասի (Սամուր գետի աջ ափով) միջև: Հայտնի է բազմաթիվ արգելավայրերով, առողջարաններով, զարգացած զբոսաշրջության և ալպինիզմի կենտրոններով:

«ԿՈՎԿԱՍ», քաղ. և բանասիր. շաբաթաթերթ (1846–47, Թիֆլիս): Հայ. 1–ին պարբ–ը՝ Կովկասում. սկզբն. շրջանում՝ որպես տեղի նույնանուն ռուս. թերթի հայ տարբերակ: Խմբ–ներ՝ Հակոբ Արզանյան, Հակոբ *Կարենյան*, Գաբրիել *Պատկանյան*:

ԿՈՎԿԱՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, *արևելագիտության* բնագավառ: Ուսումնասիրում է Այսրկովկասի և Հս. Կովկասի ժողդ–ների հոգևոր ու նյութ. մշակույթը, էթնիկ. ու քաղ. կազմավորումների պատմությունը, տեղաբնիկ ու եկվոր միավորումների լեզուները, կովկաս. քաղաքակրթության ոլորտում նրանց փոխներթափանցումները: Որպես առանձին բնագավառ՝ ձևավորվել է XIX դ–ի 30–ական թթ–ին՝ Մ. *Բրոսսեի* աշխ–ների հրապարակմամբ: 1975–ից ՀԽՍՀ ԳԱ արևելագիտ–յան ինստ–ում ստեղծվել է Կ–յան բաժին, որն ուսումնասիրում է Կովկասի ժողդ–ների պատմությունն ու մշակույթը՝ հայագիտ. առնչություններով: Հայտնի կովկասագետներից են Ն. Մառը, Հ. Օրբելին, Պ. Պետերսը, Ժ. Գաիտը, Ս. Երեմյանը, Գ. Ղափանցյանը, Պ. Մուրադյանը և ուր.:

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է 1881–ին Թիֆլիսում՝ բժիշկ Բագրատ *Նավասարդյանի* նախաձեռնությամբ, Գաբրիել *Սունդուկյանի* և Գրիգոր *Արծրունու* գործուն մասնակցությամբ: 1899–ին ուներ 21 մասնաճյուղ: Կ. հ. բ. ը. նյութ. օգնություն է ցուցաբերել հայ մտավորականությանը, աղետներից տուժած մարդկանց, գաղթականությանը, թոշակավորել կրիքավոր ուսանողներին, կազմակերպել է դասախոսություններ առողջապ–յան թեմաներով, համաճարակների դեմ պայքարող խմբեր, տրամադրել դեղորայք, բացել հիվանդանոցներ, ուսուցչ. դասընթացներ, հովանավորել դպրոցների, գրադարան–ընթերցարանների, հրատարակել գրքեր: 1899–ից զրկվել է մասնաճյուղեր ունենալու իրավունքից, վերածվել Թիֆլիսի հայոց բարեգործ. ընկ–յան, զբաղվել է հիմնականում աղքատախնամ գործունեությամբ: 1908–ից վերականգնվել են Կ. հ. բ. ը–յան նախկին իրավունքները: Գործել է մինչև 1921–ը: Ընկ–յան վարչության որոշմամբ՝ ողջ գույքը հանձնվել է ՀԽՍՀ իրավասությանը:

ԿՈՎԿԱՍԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1942–43, ՀՄՊ–ի խոշորագույն ճակատամարտերից, որն ընդգրկել է խորհրդ. զորքերի պաշտպ. (1942–ի հուլիս–1943–ի հունվ.) և հարձակող. (1943–ի հունվ–1943–ի հոկտ.) մի շարք մարտեր Դոն գետի և Մեծ Կովկասի նախալեռների միջև:

ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆ, ռուս. վոմ Կովկասում: Կազմավորվել է 1785–ին՝ Աստրախանի և Կովկասի նահգ–ներից (կենտրոնը՝ Եկատերինոգրադ): 1796–ին վերացվել է, 1844–ին վերստեղծվել՝ Թիֆլիս կենտրոնով, XIX դ–ի սկզբին Ռուսաստանին միացրած տարածքները՝ Վրաստանը, Արլ. Անդրկովկասը, Արլ. Հայաստանի մի մասը, կառավարելու նպատակով: XIX դ–ի կեսին Կ. փ–յան կազմում էին նաև Երասխից հս ընկած հայկ. հողերը, որոնք ընդգրկված էին Թիֆլիսի, Երևանի, Ելիզավետպոլի, Շամախիի նահգ–ների մեջ: 1878–ին Կ. փ–յան մեջ է մտել նաև հայկ. նոր տարածք՝ *Կարսի մարզը*: 1917–ի Փետր. հեղ–յունից հետո Կ. փ. վերացվել է, ստեղծվել է *Անդրկովկասյան հատուկ կոմիտեն*: Կովկասի փոխարքաներ և Կովկաս. բանակի հրամ–ներ են եղել Մ. Ս. Վորոնցովը (1844–56), Ն. Ն. Մուրավյովը (1854–56), Ա. Ի. Բարյատինսկին (1856–62), Մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչը (1862–82), Ի. Վորոնցով–Դաշկովը (1905–15), Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչը (1915–17):

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԳԵՂԳԵԼԻԿ (Phyloscopus sindianus), շահիրիկների ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 10,5–11, թևերի բացվածքը՝ 15–21 *սմ*, կ. զ.՝ 8,25–8,5 *գ*: Փոքր շահիրիկ է, աշխույժ, միջատներ է որոնում ծառերի սաղարթներում: Մավում է անողնաշարներով:

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԳՈՐՇ ՄԵՂՈՒ, մեղուների հնագույն ցեղ: Ունի զարգացած հոտառություն, խաղաղասեր է, կուտակում է մեծ քանակությամբ ակնամոմ: Կնճիթը երկար է (6,6–7,2 *մմ*): Աշխատավոր մեղվի կ. զ.՝ 90 *մգ*, մայր մեղվինը՝ 180–200 *մգ*: ՀՀ–ում տարածված է այս ցեղի տարատեսակը՝ *հայկական գորշ մեղուն*:

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԳՈՐՇ ՏԱՎԱՐԻ ՑԵՂ, կաթնամսատու ցեղ: Ստացվել է տեղ. տավարի և շվից ցեղերի տրամախաչումից: Հաստատվել է 1960–ին: Գորշ է, մարմնակազմվածքը՝ հոծ: Ցուլերի միջին կ. զ.՝ 800–900 *կգ*, կովերինը՝ 350–400 *կգ*: Կաթնատվությունը՝ 2000–2500 *կգ* (առլցն՝ 3000–4000 *կգ*): Բուծվում է ՀՀ–ում, Դաղստանում, Այսրկովկասի երկրներում:

«ԿՈՎԿԱՍՅԱՆ ԷՍՊԵՐԱՆՏԻՍՏ» (“Kaukaza esperantisto”), գր–գեղ. հանդես (1910–14, Թիֆլիս՝ էսպերանտոյով, նաև հայ., վրաց., ռուս.): Կովկասի էսպերանտիստների խմբի հրտ–յուն: Խմբ–հրտ.՝ Հայկ Տեր–Աստվածատրյան:

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԼԵՌՆԱՅԻՆ ԱԳԱՄՄԱ (Laudakia caucasia), **կովկասյան լաուդակիա**, ագամաների ընտանիքի ասիական լեռն. օղակապոչ ագամաների ցեղի մողես: Տարածված է ՀՀ գրեթե բոլոր մարզերում: Ապրում է չորասեր թփուտ. կամ նոսրանտառ. բուսականությամբ, լավ լուսավորված: Ձմեռում է ժայռերի խոր ճեղքերում կամ խոշոր քարերի տակ: Մարմնի երկ–յունը տարիքի հետ փոխվում է (3,6–16 *սմ*): Մավում է մանր ողնաշարավորներով և բուսականությամբ: Օգտակար է. ոչնչացնում է վնասատու միջատներին:

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՏՎԱԾՈՁ, **իբերիական կատվաձ**, լորտուների ընտանիքի կատվաձևերի սեռի օձ: Մարմնի երկ–յունը տարիքի հետ փոխվում է (14–80 *սմ*), պոչը 4–5 անգամ կարճ է: Մարմինը բարեկազմ է, գլուխը՝ մարմնից տարանջատված: Մավում է հիմնականում մողեսներով, երբեմն՝ նաև թռչունների ձագերով ու մանր կրծողներով: Կծածը մարդու և կենդանի–

ների համար վտանգավոր չէ: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՄԱՅՐԵՀԱՎ (Tetrao mlokosieviczi), մայրեհավերի ընտանիքի թռչուն: Նստակյաց է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 38–62, թևերի բացվածքը՝ 58–62 *սմ*, կ. զ.՝ 0,6–1,2 *կգ*: Արուի փետրածածկը սև է: Ապրում է ՀՀ հս. մարզերի ենթալպ. մարգագետինների սահմանում (1500–2000 *մ* բարձր-ներում), ձմռանը՝ ավելի ցածրում: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՈՂԽԱՐԻ ՅԵՂ., նրբագեղմ, բրդամսատու ցեղ: Բուծվել է 1923–36-ին Ռուսաստանի Ստավրոպոլի երկրամասի Իպատովի շրջանում՝ նորկովկաս. նրբագեղմ, ամերիկ. ռամբույեի և ասկանիական ոչխարների տրամախաչումից: Խոշոր են, ունեն ամուր մարմնակազմվածք: Գեղմը խիտ է և պարփակված, բրդի ելքը՝ 42–45 %:

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ 1817–64, պատերազմ. գործողություններ ցար. կայսրության և Հս. Կովկասի ժողդ-ների միջև: Կապված է ցար. գաղութային քաղ-յան հետ: Կովկաս. լեռնցիների ազատագր. պատերազմը 1834–59-ին գլխավորել է *Շամիլը*, որն ստեղծել է մահմեդ. աստվածապետություն՝ իմամություն: Կ. պ. ավարտվել է Հս. Կովկասի տարածքների Ռուսաստանին միացմամբ:

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԼԻԿԱՁՈՒԿ (Knipovitschia caucasica), ցլիկաձկների ընտանիքի ձուկ: ՀՀ-ում առաջին անգամ հայտնաբերվել է 1999-ին Մեծամոր գետում: Տարածված է Արարատյան դաշտի գետերում, ջրանցքներում, լճակներում: Վարում է մերձհատակ. կենսաձև: Մարմինն իլիկաձև է, երկ.՝ 2–3 (երբեմն՝ 4) *սմ*, գլուխը՝ խոշոր՝ լավ զարգացած սեյսմազգայարաններով: Մսվում է ջր. մանր կենդանիներով, հիմնականում՝ մոծակի թրթուրներով: Կարող է օգտագործվել որպես կենսբ. պայքարի միջոց՝ մալարիայի մոծակների թրթուրների ոչնչացման նպատակով:

ԿՈՎՇՈՎԱ, Նատալյա Վենեդիկտովնա (1920–1942), ռուս դիպուկահարուհի: ԽՄ հերոս (1943, հետմահու): 1941-ից՝ խորհրդ. բանակում: Մ. Ս. *Պոլիվանովայի* հետ ընկնելով ֆաշիստների շրջապատման մեջ՝ նռնակով ինքն իրեն պայթեցրել է:

ԿՈՎՊԱԿ Սիդոր Արտեմովիչ (1887–1967), Սումիի պարտիզան. ջոկատների միավորման հրամ. ՀՄՊ-ի ժամանակ: Գեն-մայոր (1943): ԽՄ հերոս (1942, 1944): 1941–45-ին 5 հարձակում է կազմակերպել ֆաշիստների թիկունքում (ավելի քան 10 հզ. *կմ*):

ԿՈՎՍԱԿԱՆ, **Կուսական, Կոսական**, 1. գվո Մեծ Հայքի Սյունիք նհնգ-ում: Համապատասխանում է այժմյան ԼՂՀ Քաշաթաղի շրջանին: Կ-ի տարածքում հայտնաբերվել են մ. թ. ա. VIII–VII դդ-ի նյութեր: X դ-ի վերջերից Կ. մտել է Սյունյաց կամ Բաղաց թագավորության մեջ: XIII դ-ում Կ. կոչվել է Գրհամ: XV դ-ից մինչև XIX դ-ի սկիզբը եղել է Պարսկաստանի տիրապետության տակ: 2. Ք. Արցախում՝ Ողջի գետի աջ ափին՝ Ստեփանակերտից 147 *կմ* հեռ-յան վրա: Բն.՝ 8,3 հզ. (2010): Կ-ով անցնում է այժմ չգործող Միջնավան–Կապան երկաթուղին: Ազատագրվել է 1993-ի նոյեմբ. 1-ին:

ԿՈՎՏՅՈՒԽ Եպիֆան Իովիչ (1890–1938), զորապետ, կորպուսի հրամ. (1935): Քաղաքաց. պատերազմի 1-ին շարասյան հրամ.՝ Թամանյան բանակի ռազմարշավի (1918), դիվիզիայի և կորպուսի հրամ. (1918–20)՝ Վոլգայի և Կովկասի մարտերի ժամանակ: Բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ԿՈՎՏՈՒՆ Վալերի Պետրովիչ (1944–2005), բալետի ուկրաինացի արտիստ: ԽՍՀՄ ժող. արտիստ (1978): 1968-ից՝ Կիևի Տ. Շևչենկոյի անվ. թատրոնի (1985-ից՝ գլխ. բալետմայստեր) մենապարող (Զիգֆրիդ՝ Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճ», Ալբերտ՝ Ա. Ադանի «Ժիզել», Ռոմեո՝ Ս. Ս. Պրոկոֆևի «Ռոմեո և Ջուլիետ», ևն):

ԿՈՎՐՈՎ, ք. ՌԴ Վլադիմիրի մարզում, համանուն շրջանի վարչ. կենտրոնը: Երկթղ. խոշոր հանգույց է: Բն.՝ 140,1 հզ. (2015):

ԿՈՏ Դ'ԻՎՈՒԱՐ, պետություն Արմ. Աֆրիկայում: Սահմանակից է Մալիին, Բուրկինա Ֆասոյին, Գանային, Լիբերիային և Գվինեային: Տարածքը՝ 322,4 հզ. *կմ²*, բն.՝ 22,4 մլն (2013): Մայրաքաղաքը՝ *Յամասուկրո:* Պաշտոն. լեզուն՝ ֆրանս.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Հավատացյալների մեծ մասը մահմեդական է, կան նաև քրիստոնյաներ և ավանդ. հավատալիքների հետևորդներ: Բաժանված է 19 վարչ. մարզերի: Անդամակցում է ՄԱԿ-ին, Աֆրիկ. միությանը: Ադքատ երկիր է. ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 1,8 հզ. ԱՄՆ դոլար է (2015): Արտահանում է կակաո, սուրճ, բամբակ, բանան, ձուկ ևն, ներմուծում մեքենաներ ու սարքավորումներ, քիմիկատներ, դեղեր, սննդամթերք, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ աֆրիկ. ֆրանկ:

XV դ-ի վերջին Կ. դ'Ի-ի տարածքում հայտնվել են պորտուգալացիներ և այլ եվրոպացիներ, որոնք արտահանել են ստրուկներ, փղոսկր ևն: XIX դ-ի 1-ին կեսից Ֆրանսիան սկսել է նվաճել երկրի տարածքը (վերջնականապես՝ 1915-ին): 1904–58-ին Կ. դ'Ի. եղել է Ֆրանս. Արմ. Աֆրիկայի կազմում: ԵՀՊ-ից (1939–45) հետո ուժեղացել է ազգ-ազատագր. շարժումը: 1960-ի օգոստ. 7-ին հռչակվել է անկախ պետություն: Մինչև 2000-ը երկիրը ղեկավարել է Կ. դ'Ի-ի ժողովրդավար. կուս-յունը (հիմնադրվել է 1946-ին, մինչև 1990-ը միակ կուս-յունն էր): 2000-ին ընդունվել է նոր սահմանադրություն: 2002-ին երկրում սկսվել է քաղաքաց. պատերազմ, որի մեջ ներքաշվել են նաև որոշ աֆրիկ. պետություններ: 2007-ին կնքվել է խաղաղության համաձայնագիր: 2010-ին, զինված դիմակայությունից հետո, երկրի նախագահ է դարձել Ա. Ուատտարան (պաշտոնապես՝ 2011-ից):

ԿՈՏԱՅՔ, **Կոտենից**, գվո Այրարատ նհնգ-ում: Արշակունիների օրոք եղել է արքունի կալված: Հայաստանի 591-ի բաժանումից հետո Կ. մասնատվել է Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև: Հայոց Բագրատունի թագավորները X դ-ի 2-րդ կեսից գվո-ը շնորհել են իրենց ավատառու Պահլավունիներին: XII դ-ի վերջերին և 1230-ական թթ-ին Զաքարյանների գերիշխանության տակ էր: XIII դ-ից մինչև XV դ-ի սկիզբը գվո-ին տիրել են Խաղբակյանները: Սեֆյան Պարսկաստանի Չուխուր Սաադ վիլայեթի (XVIII դ-ի կեսից՝ Երևանի խանության) վարչ. միավորներից՝ Կըրխբուլաղ մահալը: 1827-ին միացվել է Ռուսաստանին:

«ԿՈՏԱՅՔ» ԳԱՐԵՋՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՍՊԸ, ալկոհոլ. և ոչ ալկոհոլ. գարեջրատեսակների («Կոտայք Գոլդ», «Կոտայք չանի», «Աբովյանի չանի», «Էրեբունի» ևն) արտադր-յան ձեռն. ՀՀ-ում: «*Մոլտրի Գրուպ*» հոլդինգի ստորաբաժանում (2011-ից): Հիմնադրվել է 1974-ին Աբովյան ք-ում:

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, վտմ ՀՀ-ում: Կազմավորվել է 1995-ին, ներառում է Կոտայքի, Հրազդանի և Նաիրիի նախկին վարչ. շրջանների տարածքները: Տարածքը՝ 2093 *կմ²*, բն.՝ 255 հզ. (2014): Մարզկենտրոնը՝ *Հրազդան*: Հվ-ում սահմանակից է Երևանին, արմ-ում՝ Արագածոտնի, հս-ում՝ Լոռու, հս-արլ-ում՝ Տավուշի, արլ-ում՝ Գեղարքունիքի, հվ-ում՝ Արարատի մարզերին: Ունի 7 քաղաք. (Հրազդան, Աբովյան, Չարենցավան, Եղվարդ, Բյուրեղավան, Նոր Հաճն, Ծաղկաձոր) և 60 գյուղ. համայնքներ: Հայտնի է հանքային ջրերով՝ «Բջնի», «Արզնի», «Նոյ» ևն: Մարզում են ՀՀ մի շարք հանգստավայրեր ու առողջարաններ՝ Արզնի, Հանքավան, Ծաղկաձոր, Աղվերան ևն: Զարգացած են հողագործությունն ու անասնապահությունը:

ԿՈՏԱՅՔԻ ՋՐԱՆՑՔ, ՀՀ Կոտայքի մարզում: Սկիզբ է առնում Սևան–Հրազդան կասկադի *Արգելի ջրվէկի* 2-րդ աստիճանի ջրթեքից (դերիվացիա): Շահագործվում է 1963-ից: Երկ.՝ 43 *կմ*, ջրթողունակությունը՝ 6 *մ³/վ*: Ոռոգում է մոտ 200 *հա* հողատարածք:

ԿՈՏԱՅՔԻ ՍԱՐԱՎԱՆԴ, ՀՀ Կոտայքի մարզում: Բարձր.՝ 1200–1500 *մ*, մակերևույթը՝ ալիքավոր, թույլ կտրտված՝ տեղ-տեղ 50–60 *մ* հարաբեր. բարձր-յան խարամ. կոներով: Հս-արլ-ում լավային ծածկույթի տակից բխում են *Քառասունակն* աղբյուրները. ջրերն օգտագործում են Երևանի ջրամատակարարման համար:

ԿՈՏԱՆԳԵՆՍ [նոր լատ.՝ cotangens, < co (m plementi) tangens – լրացման տանգեսլ, *եռանկյունաչափական ֆունկցիաներից*.

ԿՈՏԱՐԲԻՆՍԿԻ (Kotarbiński) Թադեուշ (1886–1981), լեհ փիլ., տրամաբան: Լեհաստանի ԳԱ նախագահ (1957–62), ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1958), Լվով-վարշավյան դպրոցի ներկայացուցիչ: «Ռեիզմի» փիլ. տեսության և պրաքսիոլոգիայի (բանական գործունեության ընդհ. տեսություն) ծրագրի ստեղծող: Աշխ-ները վերաբերում են իմացաբանությանը, գիտ-յան մեթոդաբանությանը, բարոյագիտ-յանը, տրամաբ-յան պատմությանը:

ԿՈՏԱՐԻ Դաուլաթ Սինգհ (1906–1993), հնդ. ֆիզիկոս, աստղաֆիզիկոս: Հնդկաստանի ԳԱ ակադ. (1936, նախագահ՝ 1973–75-ին): ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1976): Աշխ-ները վերաբերում են վիճակագր. թերմոդինամիկային, աստղաֆիզիկային և ձգողության տեսությանը:

ԿՈՏԵԼՆԻԿՈՎ, Արտեմ (Կոտելնիկյանց Հարություն) Նազարի (1859–1910), խմբ., հրտ.: Ս. Պետերբուրգում Վ. Խոդկու հետ հրատարակել է «Նաշա ժիզն» (1904–06), «Նաշ դեն» (1908) թերթերը, «Զապրոսի ժիզնի» (1909–10), «Ժիզն Կովկազա» (1910) ամսագրերը (բոլորը՝ ռուս.): «Նաշա ժիզն» հրտչ-յան և գրախանութի հիմնադիրներից է: Վիճակագր. ուսումնասիրությունների հեղինակ է:

ԿՈՏԵԼՆԻԿՈՎ, Գլեբ Եվգեննիչ (1872–1944), ռուս գյուտարար: Ռուսաստանում ստեղծել է 1-ին ավիացիոն ուսապարկ. պարաշյուտը (1911), որը կիրառվել է ԱՀՊ-ում:

ԿՈՏԵԼՆԻԿՈՎ, Սեմյոն Կիրիլիչ (1723–1806), ռուս մաթեմատիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1756) և պատվ. ան-

դամ (1797): Մեխանիկայի ռուս. առաջին դասագրքի հեղինակը (1774):

ԿՈՏԵԼՆԻԿՈՎ, Վլադիմիր Ալեքսանդրովիչ (1908–2005), ռուս ռադիոտեխնիկ: ՌԳԱ ակադ. (1991, ԽՍՀՄ ԳԱ ակադ.՝ 1953–ից, փոխնախագահ՝ 1970–88–ին): Սոց. աշխ. հերոս (1969, 1978): Աշխ-ները վերաբերում են ռադիոընդունման կատարելագործման մեթոդներին, պոտենցիալ խանգարումակայունության տեսությանը, Մարսի, Վեներայի, Մերկուրիի ռադիոտեղորոշմանը: ԽՍՀՄ Պետ. (1943, 1946), Լենինյան (1964) մրց-ներ:

ԿՈՏԵՄ (Repidium), **նվարդակ, աղբակոտեմ**, կաղամբազգիների ընտանիքի կոտեմ ցեղի խոտաբույս: Վաղահաս, ցրտադիմացկուն բույս է: Հայրենիքը Հս-արլ. ու Հվ. Աֆրիկան է և Առաջավոր Ասիան: Հայտնի է 150 տեսակ, ՀՀ-ում՝ 11 (վայրի, դաշտ., բշտիկավոր, խմրուկ բանջար, լայնատերև նվարդակ)՝ Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Տավուշի և այլ մարզերում: ՀՀ գրեթե բոլոր մարզերում մշակության մեջ հայտնի է մշակովի Կ.: Տերևները պարունակում են հանք. աղեր, C վիտամին, կարոտին, յոդ, երկաթ:

ԿՈՏԻ (Coty) Ռենե Ժյուլ Գյուստավ (1882–1962), ֆրանսիացի պետ. գործիչ: 1954–ից՝ Ֆրանսիայի նախագահ: 1936–40, 1948–53–ին՝ սենատոր: Դիմադրության շարժման մասնակից: Աջակցել է նոր սահմանադրության ընդունմանը, որով հաստատվել է Ֆրանսիայում նախագահ. հանրապետության վարչակարգ: 1959–ից իշխանությունը հանձնել է Շ. դը *Գոլին*:

ԿՈՏԻ, ք. Ճապոնիայի Սիկոկու կղզում, համանուն պրեֆեկտուրայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 339 հզ. (2013):

ԿՈՏԻԿՅԱՆ Ռևիկ Արտաշեսի (1937–1993), մեխանիկոս: Տեխ. գիտ. դ-ր (1990): Աշխ-ները վերաբերում են բետոնև և երկաթբետոնե կառուցվածքների ամրության, ձևափոխման և սողքի փորձարար. ու տեխ. հետազոտություններին:

ԿՈՏԻՆ Ժոզեֆ Յակովլևիչ (1908–1979), լեհ կոնստրուկտոր: Ճարտարագիտատեխ. ծառայության գեն-գնդ. (1965): ՌԽՖՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1968): Սոց. աշխ. հերոս (1941): Կ-ի ղեկավարությամբ ստեղծվել են ԿՎ, ԻՍ ծանր տանկերը, ինքնագնաց հրետան. կայանքներ, ՊՏ-76 լողացող տանկը, ԿՏ-12, Կ-700 և տրակտորները:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1943, 1946, 1948):

ԿՈՏԻՍ, Փոքր Հայքի թագավոր՝ 38–ից՝ Զևնոնյան Պոլեմոնյան արքայատնից: ***Զևնոն Արտաշեսի*** քրոջ որդին: Թագավոր է հռչակել Հռոմի կայսր ***Կալիգուլան*** (37–41):

ԿՈՏԼՅԱԿՈՎ, Վլադիմիր Միխայլովիչ (ծ. 1931), ռուս սառցութաբան: ՌԳԱ ակադ. (1991): Աշխ-ները վերաբերում են սառցութաբանության ընդհ. խնդիրներին, ուսումնասիրել է ձյան ծածկույթների և սառցաղաշտերի բնական կապերը: Ռուսաստանի աշխարհագր. ընկ-յան պատվ. նախագահ (2000–ից, փոխնախագահ՝ 1980–2000–ին), Միջազգ. աշխարհագր. միության փոխնախագահ (1988–96):

Խաղաղության Նոբելյան (2007), ՌԴ Պետ. (2001) մրց-ներ:

ԿՈՏԼՅԱՐԵՎՍԿԻ Իվան Պետրովիչ (1769–1838), ուկրաինացի գրող, մշակութահաս. գործիչ: Մեծ ներդրում ունի ուկր. նոր գրկ-յան և գր. լեզվի զարգացման գործում: Հեղինակ է «Էնեական» (ամբողջ. տարբերակը՝ մաս 1–6, 1842) պոեմի, որը XVIII–XIX դդ-ի ուկր. ժողգ-ի կյանքի յուրօրինակ հանրագիտարան է, նաև «Նատալկա-Պոլտավկա» և «Կախարդ զինվորը» (երկուսի բեմ.՝ 1819) պիեսների:

ԿՈՏԼՅԱՐԵՎՍԿԻ Նեստոր Ալեքսանդրովիչ (1863–1925), ռուս գրականագետ, գրաքննադատ: Ս. Պետերբուրգի (1909), Ռուսաստանի (1917) ԳԱ-ների ակադ.: ՌԳԱ «Պուշկինի տուն» գիտ. հիմնարկության 1-ին տնօրենը (1910–ից): Հեղինակ է սենտիմենտալիզմին և ռոմանտիզմին, դեկաբրիստների պոեզիային վերաբերող աշխ-ների:

ԿՈՏԼՅԱՐԵՎՍԿԻ Պյոտր Ստեպանովիչ (1782–1852), հետևազորի ռուս գեն. (1826): Ռուս-պարսկ. պատերազմի (1804–13) ժամանակ հաղթել է Արաքսի (1810) ու Ալանդուզի (1812) մոտ և գրոհով գրավել Լենքորանը (1813):

ԿՈՏԼՅԱՐԵՎՍԿԻ Սերգեյ Անդրեևիչ (1873–1939), ռուս քաղ. գործիչ, պատմաբան: Ազատագրության միության, կադետների կուս-յան (1905–ից՝ ԿԿ անդամ) հիմնադիրներից: «Վերածնունդ» մասնական օթյակի հիմնադիրը (1906, Մոսկվա): Հոկտ. հեղ-յունից (1917) հետո՝ հակաբոլշևիկյան ընդհատակում: Հեղինակ է Եվրոպայի պատմությանը, միջազգ. հարաբերությունների խնդիրներին վերաբերող աշխ-ների: Գնդակահարվել է, հետագայում՝ արդարացվել:

ԿՈՏԿԱՍ (Kotkas) Յոհաննես (1915–1998), էստոնացի մարզիկ (դաս. ըմբշամարտ): ԽՍՀՄ ս. վ. վ. (1943): Օլիմպ. խաղերի (1952), Եվրոպայի (1938–39, 1947), ԽՍՀՄ (1940–56–ին՝ 12 անգամ, այդ թվում բացարձակ՝ 1940, 1943–45–ին) չեմպիոն ծանր քաշում:

ԿՈՏՄԱՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1221, ճակատամարտ հայ-վրաց. զորքերի և Այսրկովկաս ներխուժած մոնղոլների միջև՝ Կոտման (հավանաբար՝ Տավուշ) գետի մոտ: Հայ-վրաց. բանակը Իվանե Ա Զաքարյան աթաբեկի և Վրաց թագավոր Գեորգի IV Լաշայի գլխավորությամբ պարտության է մատնել մոնղոլների հավաքագրած թուրք-քրդ. զորքին, բայց ի վերջո նահանջել է՝ չդիմանալով մարտադաշտ մտած մոնղ. բանակի ճնշմանը:

ԿՈՏՅՈՆՈՉԿԻՆ Վյաչեսլավ Միխայլովիչ (1927–2000), ռուս. կինոռեժ-մուլտիպլիկատոր, նկարիչ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1987): Նկարահանել է «Այսպիսի վարպետներ ենք» (1963), «Ճանապարհորդ գորտը» (1965), «Դե՛, սպասիր» (բազմասերիանոց, 1969–92), «Նա բռնվեց» (1981) և այլ մուլտֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1988):

ԿՈՏՈՄ, բերդավան Մեծ Հայքի Աղձնիք նահանգում՝ Ասորեստանի դրունք կիրճի մոտ: X դ-ի սկզբին Կ. Զուրարիկներից գրավել է ***Գագիկ Արծրունին*** և նրա շինաբարերով վերակառուցել Աղթամարի եկեղեցին:

ԿՈՏՈՅԱՆ Հակոբ Գևորգի, ***Հաջի Հակոբ*** (1868–1915), ազգ-ազատագր. շարժման գործիչ, ֆիդայի: Մասնակցել է 1904-ի Սասունի ապստամբությանը, որից հետո նահանջել է (***Անդրանիկի*** խմբի հետ) Վան, այնտեղից անցել է Կովկաս, մասնակցել 1905–06-ի հայ-թաթար. ընդհարումներին: 1915-ի Մուշի գոյամարտի կազմակերպիչներից և ղեկ-ներից է: Զոհվել է ընտանիքի հետ:

ԿՈՏՈՅԱՆ Վաղարշակ Ահարոնի (1921–1992), կոմպոզիտոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1963): Հեղինակ է 9 օպերետի («Փեսացուներ», 1954, «Սիրո հովիտ», 1956, «Ոսկե ապարանջան», 1958, ևն), 2 վոկալ-սիմֆ. սյուիտի, 3 կոնցերտի՝ դաշնամուրի և նվագախմբի համար, օրատորիայի (Ե. Չարենցի խոսքերով), ռոմանսների, երգերի («Իմ Երևան», «Անծանոթ աղջկան», «Սավառնորդի սերը» ևն), կինոերաժշտության:

ԿՈՏՈՆ (Cotton) Էմենի (1881–1967), ֆրանսիացի ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են մագնիսականությանը: Կանանց միջազգ. դեմոկրատ. դաշնության ստեղծման նախաձեռնողներից (1945) և նախագահ, Խաղաղության կողմնակիցների շարժման կազմակերպիչներից (1949): 1940–44-ին մասնակցել է Դիմադրության շարժմանը:

Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» շքանշան (1934), Միջազգ. Լենինյան մրց. (1951):

ԿՈՏՈՆ Էմե (1869–1951), ֆրանսիացի ֆիզիկոս: Փարիզի ԳԱ անդամ (1923): Հ. ***Մուտոնի*** հետ հայտնաբերել է լուս. ճառագայթի երկրեկումը (***Կոտոն–Մուտոնի էֆեկտ***), պատրաստել է (1923) ցածր հաճախության ձայն. ալիքների պյեզոէլ. ճառագայթիչ և ընդունիչ (սեգնետյան աղի բյուրեղների օգտագործմամբ), հետազոտել լույսի անկանոն ցրումը, երկգունությունը, Զեեմանի էֆեկտը, հայտնագործել անկանոն օպտիկ. ակտիվությունը:

ԿՈՏՈՆ–ՄՈՒՏՈՆԻ ԷՖԵԿՏ, լուս. ճառագայթի երկրեկումն այդ ճառագայթին ուղղահայաց ուղղության մագնիս. դաշտում տեղադրված իզոտրոպ նյութում: Կոչվել է ի պատիվ ֆրանսիացի գիտնականների Է. ***Կոտոնի*** և Հ. ***Մուտոնի***, որոնք 1907-ին մանրամասն հետազոտել են այդ էֆեկտը:

ԿՈՏՈՎ Յուրի Ալեքսանդրովիչ (1937–2010), նյութագիտ-յան բնագավառի գիտնական: ՌԳԱ թղթ. անդամ (1991): Աշխ-ները վերաբերում են էլ. հոսանքով հաղորդիչների պայթյունների խնդիրներին, երկրորդային պայթուցիկ նյութերի պայթյուն առաջացնող միջոցների մշակմանը, գերմանր փոշիների ստացմանը:

ԽՍՀՄ (1984) և ՌԴ (2002) Պետ. մրց-ներ:

ԿՈՏՈՎՍԿԻ Գրիգորի Իվանովիչ (1881–1925), ռուս զորահրամ., մոլդովացի գյուղացիների զինված ելույթների ղեկ.՝ 1905 և 1915-ին Բեսարաբիայում: 1917–22-ի քաղաքաց. պատերազմի ժամանակ՝ հեծելազոր. բրիգադի և դիվիզիաների, 1922-ից՝ կորպուսի հրամ.: Սպանվել է:

ԿՈՏՈՐ, **Կոտորք**, բերդ Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Անձախի ձոր գվռում: Հիմնադրման ժամանակն անհայտ է: Բագրատունիների թագավորության սկզբին վերանորոգվել է և դարձել պետության սահման. զորակայան: X դ-ի սկզբին անցել է ***Արծրունիներին***:

ԿՈՏՈՐԱԿ, 1. (մաթ.) միավորի ամբողջ թվով մասերից կազմված թիվ: Կ. արտահայտվում է 2 ամբողջ թվերի հարաբերությամբ՝ m/n, որտեղ n-ը (Կ-ի հայտարար) ցույց է տալիս, թե միավորը քանի հավասար մասերի է բաժանված, իսկ m-ը (Կ-ի համարիչ)՝ թե քանի այդպիսի մաս է պարունակվում Կ-ում: Եթե Կ-ի համարիչը փոքր է հայտարարից, Կ. կոչվում է **կանոնավոր**, իսկ եթե մեծ կամ հավասար է հայտարարին՝ **անկանոն:** Եթե Կ-ի հայտարարը 10-ի ամբողջ աստիճան է (օր.՝ 10, 100, 1000 ևն), ապա Կ. կոչվում է **տասնորդական** և գրվում է առանց հայտարարի՝ համարիչում աջից ստորակետով անջատելով այնքան նիշ, որքան գրո է պարունակում հայտարարը, օր.՝ 7/100 = 0,07: 2. (Որսորդ.) կապարե (հազվա-

դեպ՝ պողպատե) կամ այլ մետաղե գնդիկ-ներ՝ փամփուշտների մեջ, որոնցով կրակում են որսորդ. հարթափող հրացանով:

ԿՈՏՈՐԱԿԱԳԾԱՅԻՆ ՖՈՒՆԿՑԻԱ, 2 գծային ֆունկցիաների քանորդը, այսինքն՝ $y = (ax + b)/(cx + d)$ տեսքի ֆունկցիա:

ԿՈՏՈՐԱԿԱՅԻՆ ՄԱՍ x թվի, այդ թվի և նրա [x] ամբողջ մասի տարբերությունը, այսինքն՝ {x} = x – [x]: Կ. մ. միշտ մեծ է 0-ից, բայց փոքր է 1-ից:

ԿՈՏՐՏՎՈՂ ԵԼԻԿԱՄՈՂԵՍ (Anguis fragilis), **կոտրտվող սղոսկուկ, լորտու** (*ժող.*), իլիկամողեսների կամ սղոսկուկների ընտանիքի իսկական իլիկամողեսների Anguis սեռի մողես: ՀՀ-ում հանդիպում է անտառ., մարգագետնատափաստան., լեռնատափաստան. բուսականությամբ քարքարոտ տարածքներում և այգիներում: Մարմնի երկ.՝ մինչև 14 *սմ*, պոչը՝ գրեթե նույն չափի: Մսվում է հիմնականում անողնաշարներով: Ձվակենդանածին է:

ԿՈՏՈՒՐԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, տես *Վաապուրականի լեռնաշղթա*:

ԿՈՐԱԳԻԾ ԻՆՏԵԳՐԱԼ, որևէ կորի երկայնքով n-չափանի էվկլիդեսյան տարածության մեջ տրված ֆունկցիայի ***ինտեգրալ***: Կ. ի. կարելի է հանգեցնել **որոշյալ ինտեգրալի**, իսկ մի քանի լրացուցիչ պայմանների դեպքում՝ **կրկնակի ինտեգրալի** (*Գրինի բանաձև*) կամ **մակերևութային ինտեգրալի** (*Ստոքսի բանաձև*):

ԿՈՐԱՆՅԻ (Korányi) Շանդոր (1866–1944), հունգար թերապևտ, Հունգարիայի կլինիկ. բժշկագիտ-յան ֆունկցիոնալ ուղղության հիմնադիրը: Ներմուծել է «երիկամային անբավարարություն» հասկացությունը և ֆունկցիոնալ ախտորոշման մեթոդները: Աշխ-ները վերաբերում են արյան շրջանառության համակարգի ախտաբանությանը, նյութափոխանակությանը:

ԿՈՐԱՆՏԵՅՆ (Corantijn), գետ Հվ. Ամերիկայում, հիմնականում՝ Գայանայի և Սուրինամի սահմանին: Երկ.՝ շուրջ 700 *կմ*, ավազանը՝ 56 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1200 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է Օրիլա ք-ից:

ԿՈՐԱՑՅԻ (Corazzi) Անտոնիո (1792–1877), լեհ ճարտ., քաղաքաշինարար: Վարշավայում կառուցել է մոնումենտալ շենքեր (Ս. Մտաշիցի պալատը, 1820–23, Մեծ թատրոնը, 1825–32), կազմել Բանկի և Թատեր. հրապարակների հատակագծերը, որոնք կանխորոշել են Վարշավայի կենտրոնի տեսքը:

ԿՈՐԲԱ, ք. Հնդկաստանի Չհատտիսգարհ նահանգ-ում՝ Խադո գետի ափին: Բն.՝ 365 հզ. (2011):

ԿՈՐԲՈՒԼՈՆ (Corbulo) Գնեոս Դոմետիոս (ծ. թ. անհտ–67), հռոմեացի զորավար: 47-ին պատերազմել է գերմ. ցեղերի դեմ: Հռոմի և Պարթևստանի ու Հայաստանի միջև 10-ամյա պատերազմի (54–63) ժամանակ նշանակվել է Կապադովկիայի կուսակալ: 58-ի գարնանը ներխուժել է Հայաստան, գրավել Արտաշատը, 59-ի գարնանը հիմնովին ավերել այն: 61-ին կնքել է համաձայնություն, որով Հայաստանից դուրս են բերվել հռոմ. և պարթև. զորքերը, Տրդատ Ա-ն ճանաչվել է Հայոց թագավոր:

ԿՈՐԲՈՒԹ Օլգա Վալենտինովնա (ծ. 1955), բելառուս մարմնամարզուհի: ԽՍՀՄ ս. վ. վ. (1972): Օլիմպ. խաղերի (1972, 1976), աշխարհի (1974), ԽՍՀՄ (1970, 1974, 1976) չեմպիոնուհի՝ առանձին վարժություններում և թիմ. մրցումներում:

ԿՈՐԳԱՆՅԱՆ (Ղորղանյան) Միքայել Ալեքսանդրի (1907–1974), դերասան: Ադրբ. ԽՍՀ ժող. արտիստ (1960): 1927–1932-ին՝ Բաքվի հայկ., 1932-ից՝ Ստեփանակերտի դրամատիկ. (հիմնադիրներից) թատրոնների դերասան (Օթարյան՝ Շիրվանզադեի «Պատվի համար», Պեպո՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», Ֆերդինանդ՝ Ֆ. Շիլլերի «Սեր և խարդավանք», ևն): Բեմադրել է պիեսներ:

ԿՈՐԳԱՆՈՎ Նիկոլայ Նիկոլայի (1891–1961), հոգեբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (1958), պրոֆ.: ԽՍՀՄ բժշկ. ԳԱ թղթ. անդամ: 1937–38 և 1944–45-ին՝ Ռոստովի պետ. բժշկ. ինստ-ի ռեկտոր: Աշխ-ները վերաբերում են շիզոֆրենիայի վաղաժամ ախտորոշմանը, աշխ. փորձաքննության և բուժման հարցերին: Քաղ. գիտելիքների տարածման ընկ-յան Դոնի Ռոստովի բաժանմունքի նախագահ: Լենինի շքանշան:

ԿՈՐԴ (ֆրանս.՝ corde – պարան, քուղ), 1. քիմ. (հազվադեպ՝ բամբակաթղթե) թելքերից ոլորված մեծ ամրության թել: Օգտագործում են ավտոմոբիլ., ավիացիոն և այլ տիպերի անվադողեր, ռետինով տոգորված տեքստիլ իրեր պատրաստելու համար: 2. Դիմային մակերևույթին երկայն. մակաշերտիկներ ունեցող բրդե կտոր, որից հիմնականում վերնազգեստ են կարում:

ԿՈՐԴԱ (Korda) Ալեքսանդր (Շանդոր Լասլո Քելներ, 1893–1956), անգլ. կինոյի հունգար կինոռեժ., սցենարիստ, պրոդյուսեր: 1931-ից՝ Անգլիայում: Նկարահանել է «Հենրի VIII-ի անձնական կյանքը» (1933), «Ռեմբրանդ» (1936), «Լեդի Համիլտոն» (1941), «Իդեալական ամուսին» (1947) և այլ ֆիլմեր: Նշանավոր մարդկանց «անձնական կյանքի» մասին պատմ. մելոդրամայի հիմնադիրն է:

ԿՈՐԴԵԲԱԼԵՏ (ֆրանս.՝ Corps de ballet, < corps – անձնակազմ և ballet – բալետ), օպերաբալետ. թատրոնում խմբային ու զանգված. պարեր կատարողների խումբ:

ԿՈՐԴԵԼԻԱ, *Ուրանի* արբանյակ, հայտնաբերվել է «Վոյաջեր-2» (ԱՄՆ, 1986) տիեզ. ապարատով: Հեռ. Ուրանից՝ մոտ 50 հզ. *կմ*, տրամագիծը՝ մոտ 40 *կմ*: Կոչվել է բրիտների լեգենդար թագուհու անունով:

ԿՈՐԴԻԱՄԻՆ, կորամին, նիկամիդ, ԿՆՀ խթանող դեղանյութ. գրգռում է շնչառությունը և բարձրացնում սիրտանոթ. համակարգի տոնուսը: Օգտագործում են ներքին ընդունման (կաթիլներով), ենթամաշկ. և ներերակ. ներարկման (սրտի թուլության, շնչառության թուլացման, շնչահեղձության, թունավորումների և շոկային վիճակի դեպքերում) համար:

ԿՈՐԴԻԼԻԵՐԱ ՌԵԱԼ (Cordillera Real), լ-շղթա Կենտր. Անդերի արլ-ում՝ Բոլիվիայում և Պերուում: Երկ.՝ 190 ***կմ***, բարձր.՝ մինչև 6550 *մ* (Անկոում լ.): Արլ-ում խոնավ արևադարձ. անտառներ են, արմ. լանջերին՝ կիսաանապատներ:

ԿՈՐԴԻԼԻԵՐՆԵՐ (իսպ.՝ Cordilleras – բառացի՝ լ-շղթաներ), երկրագնդի ամենաերկար լեռն. համակարգը: Ձգվում է Հս. և Հվ. Ամերիկաների արմ-ում՝ ավելի քան 18 հզ. *կմ* երկ-յամբ, հս. լայն-յան 66°-ից մինչև հվ. լայն-յան 56°-ը՝ առաջացնելով հսկա պատնեշ մայրցամաքների արլ. հարթավայրերի և Խաղաղ օվկ-ի մերձափնյա շրջանների միջև: Ջրբաժան է Ատլանտ. և Խաղաղ օվկ-ի ավազանների միջև: Առավել բարձր գագաթները՝ Սաք Քինլի (6193 *մ*, Ալյասկայում), Ակոնկագուա (6960 *մ*, Արգենտինայում): Լայն. Հս. Ամերիկայում՝ մինչև 1600 *կմ*, Հվ. Ամերիկայում՝ մինչև 900 *կմ*: Բաղկացած են բազմաթիվ զուգահեռ լ-շղթաներից, որոնք պարփակում են ներքին սարավանդները, սարահարթերը (Յուկոն, Ֆրեյզեր, Կոլորադո, Պունա ևն) և բարձրավանդակները (Մեծ Ավազան, Մեքսիկ., Պերուական Կենտրոնաանդյան): Կան պղնձի, կապարի, ցինկի, մոլիբդենի, վոլֆրամի, ոսկու, արծաթի, պլատինի, անագի և այլ օգտ. հանածոների նշանակալի պաշարներ:

ԿՈՐԴՈՎԱ (իսպ.՝ Córdova), ք. Իսպանիայի Անդալուզիա ինքնավար համայնքում՝ Գվադալկվիվիր գետի ափին, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 330,0 հզ. (2010): Հիմնադրվել է մ. թ. ա. 152-ին:

ԿՈՐԴՈՖԱՆՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ, ժողդ-ների խումբ (կոալիբ, տեգալի, տագոյ, կադուգլի-կրոնգո ևն) Սուդանում (***Կորդոֆան***): Ընդհ. թիվը՝ շուրջ 700 հզ. (2002): Խոսում են կորդոֆանյան լեզուներով: Սունննի մահմեդական են:

ԿՈՐԴՎԱՅՑ ԼԵՌՆԵՐ, լեռն. համակարգ Հայկ. լ-աշխարհում՝ Հայկ. Տավրոսից արլ.: Բաղկացած է 3 շղթայից՝ Բուն Կորդվաց (երկ.՝ 110 *կմ*), Ագարակի (80 *կմ*) և Նպատական (135 *կմ*): Առլճն բարձր.՝ 4168 *մ* (Ջիլո լ.):

ԿՈՐԴՈՒԻՔ, հայկ. հեթանոս. տոմարի ամսվա 22-րդ օրվա անվանումը: Կապված է Կորդվաց լ-ների անվան հետ:

ԿՈՐԴՈՒԿ, Կորդոյք, Մեծ Հայքի ***Կորճայք*** նահանգ-ի ամենախոշոր գվո-ը: ***Արտաշեսյանների*** և ***Արշակունիների*** թագավորության ժամանակ (մ. թ. ա. II դ.– մ. թ. V դ.) Կ-ի իշխանը եղել է Հայաստանի հվ. զորաթևի կուսակալը՝ բդեշխը: 640-ին Կ. գրավել են արաբները: XVI դ-ում ընկել է թուրք. տիրապետության տակ: Մեծ եղեռնից հետո Կ. հիմնականում դարձել է քրդաբնակ:

ԿՈՐԵԱ (կորեերեն՝ Չոսոն – վաղորդյան զովության երկիր), աշխարհագր. տարածք Արլ. Ասիայում: Ջրաղեցված է 2 պետություններով՝ հս-ում ***Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետությունն*** է (ԿԺԴՀ), հվ-ում՝ ***Կորեայի Հանրապետությունը*** (ԿՀ): Տարածքը՝ 220,8 հզ. *կմ*^{2}, բն.՝ 72,2 մլն (2007):

Մ. թ. ա. V–IV դդ-ում Կ-ի տարածքում ամենախոշոր ստրկատիր. պետությունը Չոսոնն էր, որը մ. թ. ա. 109-ին նվաճել է չին. Հան կայսրությունը: Մ. թ. սկզբին առաջացել են վաղ. պետություններ՝ Կոգուրյոն, Պեկչեն, Սիլլան: IV–VI դդ-ում տարածվել են կոնֆուցիականությունը և բուդդայականությունը: 935-ին երկիրը միավորել է Կորյո պետության (հիմն.՝ 918, ըստ ավանդության՝ Կորյո անունից առաջացել է երկրի եվրոպ. անվանումը) հիմնադիր Վան Դոնը: 1231-ին Կ. են ներխուժել մոնղոլները: 1392-ին Կորյոյի զորահրամ-ներից Լի Սոն Դեն հռչակվել է թագավոր և հիմնել Լի հարստությունը (1392–1910): XIX դ-ում կառ-յունը, փորձելով պահպանել ավատ. հարաբերությունները, ձգտել է Կ. մեկուսացնել արտաքին աշխարհից: Կորեական զորքերը հետ են մղել Ֆրանսիայի (1866), ԱՄՆ-ի (1871) ռազմանավերի հարձակումները, որոնք ցանկացել են ուժով բացել Կ-ի նվիճգստ-ները: XIX դ-ի 2-րդ կեսին Կ. առևտր. անհրավաւասար պայմանագրեր է կնքել Ճապոնիայի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի և այլ երկրների հետ: 1885-ին Ճապոնիայի

և Չինաստանի միջև կնքված պայմանագրով հավասարվել են Կ–ի նկատմամբ կողմերի հավակնությունները: Կ. դարձել է կիսագաղութ. երկիր: 1896–ին Ռուսաստանի և Ճապոնիայի միջև կնքված համաձայնագրով Կ. ճանաչվել է անկախ: 1904–05–ի ռուս–ճապոն. պատերազմի ժամանակ Ճապոնիան նվաճել, 1910–ին իրեն է բռնակցել Կ.: ԵՀՊ–ում Ճապոնիայի ջախջախումից հետո Կ. 38° զուգահեռականով բաժանվել է խորհրդ. և ամերիկ. նվաճող. գոտիների: 1948–ին երկրի հս–ում հռչակվել է Կ–ի ԺԴՀ–ն, հվ–ում՝ Կ–ի Հանրապետությունը:

ԿՈՐԵԱԿԱՆ ԳԻՐ, ինչյուն. տառավանկային գիր (հնում՝ օնմուն, այժմ՝ կունմուն, խանգիլ ևն): Գրության ուղղությունը վերևից ներքև է, որոշ բացառություններով՝ աջից ձախ:

ԿՈՐԵԱԿԱՆ ԹԵՐԱԿՂՋԻ, Արլ. Ասիայում՝ Ճապոն. և Դեղինի ծովերի միջև: Տարածքը՝ մոտ 150 հզ. *կմ*^{2}, երկ.՝ մոտ 600 *կմ*: Կ. թ–ում են Կորեայի ԺԴՀ–ն և Կորեայի Հանրապետությունը: Արլ–ի ռելիեֆը լեռնային է, արմ–ը՝ բլրոտ հարթավայր.: Կլիման՝ բարեխառն, մուսսոն., հվ–ում՝ մերձարևադարձ., տեղումները՝ 900–1500 *մմ*: Տարածված են խառը, լայնատերև և մշտականաչ անտառներ ու թփուտներ: Գետերը (Ամնոկկան, Տումանգան, Տեդոնգան, Կիմգան ևն) ջրառատ են: Կան ազգ. պարկեր (Հանրյո, Չիրիսան, Սորակսան ևն): Հարթավայրերը մշակվում են (բրինձ, սոյա, բամբակենի): Կան վոլֆրամի, գրաֆիտի, մագնեզիտի հանքավայրեր:

ԿՈՐԵԱԿԱՆ ԿՂԶԵԽՈՒՄԲ, շուրջ 3,5 հզ. կղզիների ընդհ. անվանումը *Կորեական թերակղզու* հվ. և հվ–արմ. ափերի մոտ: Խոշոր կղզիները՝ Կոջեդո, Նամհեդո, Չինդո (Կորեայի Հանրապետություն):

ԿՈՐԵԱԿԱՆ ՆԵՂՈՒՏ, *Կորեական թերակղզու* և ճապոն. Իկի, Կյուսյու, Հոնսյու կղզիների միջև: Միացնում է Ճապոն. և Արլ–չին. ծովերը: Լայն.՝ 180 *կմ*, նվզգն խոր.՝ 115 *մ*: Ցուսիմայի կղզիներով բաժանվում է Արլ. և Արմ. անցումների: Ռուս–ճապոն. պատերազմի (1904–05) ժամանակ Կ. ն–ում տեղի է ունեցել ռուս. և ճապոն. հածանավային նավատորմերի խոշոր ծովամարտ (տես *Ցուսիմայի ճակատամարտ 1905*):

ԿՈՐԵԱԿԱՆ ՊԱՐԱՆՈՑ, *Կորեական թերակղզու* հս. նեղ մասը (մինչև 160 *կմ*) Կորեայի ԺԴՀ–ում՝ Արլ–կորեական և Արմ–կորեական նեղուցների միջև:

ԿՈՐԵԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԿԺԴՀ), պետություն Արլ. Ասիայում՝ Կորեայի թ–կղզու հս. մասում և, մասնավորապես, մայրցամաքում: Զբաղեցնում է Կորեական թ–կղզին և շրջակա կղզիները: Ողողվում է Ճապոն. (արլ–ից) և Դեղին (արմ–ից) ծովերով: Սահմանակից է ՌԴ–ին, Կորեայի Հանրապետությանը, Չինաստանին: Տարածքը՝ 120,5 հզ. *կմ*^{2}, բն.՝ 24,5 մլն (2013): Մայրաքաղաքը՝ *Փհենյան*: Պետ. լեզուն՝ կորեերեն: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը Պաշտպ–յան պետ. կոմիտեի 1–ին նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Բաժանված է 9 վարչ. պրովինցիաների և կենտր. ենթակայության քաղաքի (Փհենյան), կան նաև տնտ. հատուկ կարգավիճակ ունեցող քաղաքներ: Հավատացյալները բուդդայական են: Անդամակցում է ՄԱԿ–ին: Աշխարհի ամենափակ, հետամնաց և ռազմականացված երկիրն է; ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 1,9 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է ծովամթերք, ածուխ, մետաղներ, տեքստիլ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթ ու նավթամթերք, սննդամթերք: Դրամ. միավորը՝ վոնա: 2006 և 2009–ին միջուկ. զենքի փորձարկումների պատճառով միջազգ. պատժամիջոցներ են կիրառվում:

ԽՍՀՄ–ի և ԱՄՆ–ի նվաճող. զորքերի դուրսբերումից հետո (1948–49) ԿԺԴՀ–ի և Կորեայի Հանրապետության միջև 1950–ին սկսվել է պատերազմ, որի ժամանակ ԿԺԴՀ–ի կողմից մասնակցել են չին. ռազմ. կազմավորումներ, իսկ Կորեայի Հանրապետության կողմից՝ ԱՄՆ–ի և մի շարք այլ երկրների զինված ուժեր: 38° զուգահեռականով ռազմաճակատի կայունացումից հետո 1953–ին հաստատվել է հրադադար, որով հակամարտող կողմերի միջև ստեղծվել է 4 *կմ* լայն–յամբ ապառազմականացված գոտի: ԿԺԴՀ–ում հաստատվել է միակուս. համակարգ: Կորեայի աշխ. կուս–յան ղեկ. ***Կիմ Իր Սենի*** գլխավորությամբ երկրում հռչակվել է «կորեական տիպի սոցիալիզմ»: 1980–ական թթ–ի վերջերին ակտիվացել են շփումները 2 երկրների միջև՝ խաղաղ միավորման նպատակով: 1991–ին կնքվել է հաշտեցման, չհարձակվելու, փոխանակության և համագործակցության մասին համաձայնագիր: Կիմ Իր Սենի մահից հետո երկիրը գլխավորել են որդին՝ Կիմ Չեն Իրը, ապա՝ վերջինիս որդին՝ Կիմ Չեն Ընը (2011–ից՝ բարձրագույն ղեկ., 2016–ից՝ ԿԺԴՀ Պետ. խորհրդի, Աշխ. կուս–յան նախագահ): 2000–ական թթ–ից միջուկ. ծրագրերի վերսկսման և բալիստիկ հրթիռների չդադարող փորձարկումների պատճառով երկրի հանդեպ կիրառվում են միջազգ. պատժամիջոցներ:

ԿՈՐԵԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԿՀ), պետություն Արլ. Ասիայում: Սահմանակից է Կորեայի ԺԴՀ–ին: Տարածքը՝ 100,2 հզ. *կմ*^{2}, բն.՝ 51,4 մլն (2014): Մայրաքաղաքը՝ *Սեուլ*: Պաշտոն. լեզուն՝ կորեերեն: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Բաժանված է 9 վարչ. պրովինցիաների և կենտր. ենթակայության 7 քաղաքների: Հավատացյալները բուդդայական են, բողոքականներ և կաթոլիկներ: Անդամակցում է ՄԱԿ–ին, ԱռտՀԿ–ին ևն: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 28 հզ. ԱՄՆ դոլար է (2008): ԿՀ նոր ինդուստրիալ երկրներից է՝ մշակող արդ–յան զարգացման բարձր մակարդակով (5–րդը՝ աշխարհում): Արտահանում է կիսահաղորդիչներ, հաղորդակցության միջոցներ, մեքենաներ և սարքավորումներ, տրանսպորտ. միջոցներ, ներմուծում նավթ, սննդամթերք: Դրամ. միավորը՝ վոնա:

1993–2008–ին արտաքին քաղ–յան մեջ կարևորվել է Կորեայի ԺԴՀ–ի հետ երկխոսություն սկսելը, որը, սակայն, դադարեցվել է Կորեայի ԺԴՀ–ի՝ միջուկ. ծրագրերի վերսկսումից և բալիստիկ հրթիռների փորձարկումից հետո: Կորեայի ԺԴՀ–ի դեմ պատերազմի ավարտից հետո 1953–ին (ուժի մեջ է մտել 1954–ին) Կ ԱՄՆ–ի հետ ստորագրել է համատեղ պաշտպ–յան մասին պայմանագիր: 1960–80–ական թթ–ին երկրում հաստատվել է ռազմ. կառավարում, որն ավարտվել է 1993–ին: Իշխանության եկած քաղաքաց. կառ–յունը հռչակել է լայն բարեփոխումների իրականացման ու վերամիավորման նպատակ Կորեայի ԺԴՀ–ի հետ: Սակայն վերջինիս կողմից ցայսօր շարունակվող միջուկ. և հրթիռ. փորձարկումների պատճառով *Մյոն Բակի* և *Օհ Սե Հունի* կառ–յունները դադարեցրել են պաշտոն. շփումները Կորեայի ԺԴՀ–ի հետ:

ԿՈՐԵԱՅԻՆԵՐ (ինքնանվանումը ԿՀ–ում՝ հանգուկ սարամ, Կորեայի ԺԴՀ–ում՝ չոսոն սարամ, ՌԴ–ում՝ կորյո սարամ), ժողդ, ԿՀ–ի (46,9 մլն) և Կորեայի ԺԴՀ–ի (22 մլն) հիմն. բնակչությունը: Ապրում են նաև Չինաստանում (1,9 մլն, 2000), ԱՄՆ–ում (1,5 մլն, 2005), Ճապոնիայում (շուրջ 855,7 հզ., 2015), Ուզբեկստանում (186,2 հզ., 2015), ՌԴ–ում (148 հզ., 2002), Կանադայում (146 հզ., 2001) ևն: Լեզուն՝ կորեերեն: Քրիստոնյա են, բուդդայական, կորեական սինկրետիկ. պաշտամունքների հետևորդներ:

ԿՈՐԵԵՐԵՆ, *կորեացիների* լեզուն, Կորեայի ԺԴՀ–ի և ԿՀ–ի պաշտոն. լեզուն: Վերագրվում է մեկուսացած լեզուներին. ծագման մասին կան տարակարծություններ (դրավիդյան, ճապոն., հնասիական, հնդեվրոպ. ևն): Կորեայի ԺԴՀ–ում օգտագործում են *կորեական գիրը*, ԿՀ–ում՝ չին–կորեական խառը գիրը:

ԿՈՐԵԼԼԻ (Corelli) Արկանջելո (1653–1713), իտալացի ջութակահար, կոմպոզիտոր: Ջութակի իտալ. դպրոցի հիմնադիրը: Հեղինակ է սոնատների (տրիո–սոնատներ, ջութակի սոնատ՝ բաս կոնտինուոյի հետ), կոնչերտո գրոսսոների ևն:

ԿՈՐԵԼԼԻ Ֆրանկո (1921–2003), իտալացի երգիչ (տենոր): 1954–ից՝ Միլանի «Լա Սկալա» օպեր. թատրոնի մենակատար, հանդես է եկել իտալ. օպերաների քնար. դերերգերով (Ռադամես՝ Ջ. Վերդիի «Աիդա», Պոդիկտոս՝ Գ. Դոնիցետտիի «Պոդիկտոս», ևն): Օպեր. վերջին դերակատարումը՝ 1981–ին: Կամեր. երգացանկում՝ հիմնականում նեապոլյան երգեր: Անկոն ք–ում անցկացվում է մեներգիչների Կ–ի անվ. մրցույթ:

ԿՈՐԵԿ, դաշտավլուկազգիների (հացազգիներ) ընտանիքի միամյա կամ բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 442 տեսակ: ՀՀ–ում մշակության մեջ (սահմանափակ) տարածված է սովոր. Կ.: Կ–ից ստանում են ձավար, ալյուր, խտացրած կեր, կանաչ զանգված, խոտ:

ԿՈՐԵԿՆՈՒԿ (Miliaria calandra), դրախտապանների ընտանիքի թռչուն: Նստակյաց է, տարածված: Մարմնի երկ.՝ 18, թևերի բացվածքը՝ 26–32 *սմ*: Մարմինը գեր է, կտուցը՝ հաստ: Թռիչքն արագ է և ալիքաձև: Ապրում է մշակովի դաշտերում, արոտավայրերում, ենթալպ. մարգագետիններում և այլուր: Օգտակար է. սնվում է հիմնականում մոլախոտերի սերմերով: Դաշտ. պայմաններում ճանաչելի է բնորոշ երգով ու կեցվածքով:

ԿՈՐԵՆ Սերգեյ Գավրիլովիչ (1907–1969), ռուս. բալետի արտիստ, բալետմայստեր: ՌԽՖՍՀ արվ. վաստ. (1939), Կաբարդինա–Բալկար. ԻԽՍՀ ժող. (1957) արտիստ: 1930–1942–ին՝ Լենինգրադի ՕԲԹ–ի, 1942–60–ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մենապարող (Էսպադա՝ Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ», Մերկուցիո՝ Ս. Ս. Պրոկոֆևի «Ռոմեո և Ջուլիետ», ևն), 1960–69–ին՝ բալետմայստեր–փորձավար: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

ԿՈՐԵՆԵՎ Վլադիմիր Բորիսովիչ (ծ. 1940), ռուս դերասան: ՌԴ ժող. արտիստ (1998): 1961–ից՝ Մոսկվայի Կ. Ս. Ստանիսլավսկու անվ. թատրոնի դերասան: Աչքի է ընկել

և՛ կատակերգ., և՛ դրամատիկ. դերերով (Կիրպատի, Լարիոսիկ՝ Մ. Ա. Բուլգակովի «Տուրբինների օրերը», Ֆերդինանդ՝ Ֆ. Շիլլերի «Սեր և խարդավանք», Օսիպ՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», Փաստաբան՝ «Վթար»՝ ըստ Ֆ. Դյուրենմաթի, ևն): 1960-ական թթ–ին ճանաչվել է Իխտիանդրի դերով՝ «Երկկենցաղ մարդը» կինոնկարում: Նկարահանվել է նաև «Դոն Կիխոտի երեխաները», «Արբատի զավակները», «Աստծու պարգևը» և այլ ֆիլմերում:

ԿՈՐԵՊԱՆՈՎ–ԿԵԴՐՈՒ Դմիտրի Իվանովիչ (1892–1949), ուդմուրտ գրող: Հեղինակ է «Էշտերեկ» (1915) ողբերգության, «Հին գյուղ» (1926) ինքնակենսագր. վիպակի, «Ծանր լուծ» (1929) վեպի: Բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ԿՈՐԹԻՆ, *ծոթրին, ծիթրոն, կորդյուն*, խուլեղինջազգիների (շրթնածաղկավորներ) ընտանիքի միամյա, բազմամյա խոտաբույսերի, թփերի, կիսաթփերի ցեղ: Հայտնի է մոտ 30 տեսակ, ՀՀ–ում՝ 2 (պարտեզային և խոշորածաղիկ)՝ գրեթե բոլոր մարզերում, Երևանի շրջակայքում: Դեղաբույս է: Պարունակում է եթերայուղեր, որոնք օգտագործում են օծանելիքի, լիկյորի, կոնյակի արտադրյան, սննդի մեջ, նաև որպես համեմունք:

ԿՈՐԺԵՆԵՎՄԿԱՅԻ ՊԻԿ, Պամիրի Գիտ–յունների ակադ–ի լ–շղթայում: Բարձր.՝ 7105 մ: Կոչվել է Ն. Լ. *Կորժենևսկու* կնոջ՝ Ե. Կորժենևսկայայի անունով:

ԿՈՐԺԵՆԵՎՍԿԻ Նիկոլայ Լեոպոլդովիչ (1879–1958), ռուս. սառցաթաբան և աշխարհագետ: Ուզբ. ԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1947): Կազմել է Միջին Ասիայի սառցադաշտերի տեղեկագիրը: Հայտնագործել և ուսումնասիրել է ավելի քան 70 սառցադաշտ և Պամիրի ու Տյան Շանի մի շարք լ–գագաթներ (այդ թվում՝ իր կնոջ պատվին կոչված *Կորժենևսկայայի պիկը*):

ԿՈՐԺԵՆԵՎՍԿԻ (Korzeniowski) Ռոբերտ (ծ. 1968), լեհ մարզիկ (աթլետիկա, քայլք), Օլիմպ. խաղերի քառակի (1996, 2000, 2004), աշխարհի (1997, 2001, 2003) և Եվրոպայի (1998, 2002) չեմպիոն:

ԿՈՐԺԵՎ (Կորժև–Չուվելյով) Գելի Միխայլովիչ (1925–2012), ռուս գեղանկարիչ: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1979): ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի թղթ. անդամ (1970): Հայտնի են «Կոմունիստները» (եռապատկեր, 1957–60), «Պատերազմի կրակով այրվածները» (շարք, 1962–67) և այլ գործեր:
ԽՍՀՄ Պետ. (1987), ՌԽՖՍՀ Ռեպինի անվ. (1966) մրց–ներ:

ԿՈՐԺԻՆՍԿԻ Դմիտրի Սերգեևիչ (1899–1985), ռուս երկրաբան: Ֆիզքիմ. ապարաբանության և հանքաբանության հիմնադիրներից: Ս. Ի. *Կորժինսկու* որդին: Աշխ–ները վերաբերում են հանքառաջացման ֆիզքիմ. շարժընթացների հարցերին: ԽՍՀՄ Պետ. (1946, 1975), Լենինյան (1958) մրց–ներ, ԳԱ Վ. Ի. Վեռնադսկու անվ. ոսկե մեդալ:

ԿՈՐԺԻՆՍԿԻ Սերգեյ Իվանովիչ (1861–1900), ռուս բուսաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1896): Դ. Ս. *Կորժինսկու* հայրը: Զարգացրել է կարգաբանության ձևաբանաաշխարհագր. մեթոդը: Հեղինակ է տափաստանում անտառի տարածման տեսության, Հ. դե Ֆրիզից անկախ հիմնավորել է (1899) էվոլյուցիայի մուտացիոն տեսությունը:

ԿՈՐԻ (Corey) Էլայաս Ջեյմս (ծ. 1928), ամերիկացի քիմիկոս–օրգանիկ: Աշխ–ները վերաբերում են տարածաքիմիային, կառուցվածք., սինթետիկ և տես. օրգ. քիմիայի մեթոդաբանությանը: Նոբելյան մրց. (1990):

ԿՈՐԻ (Cori) Կառլ Ֆերդինանդ (1896–1984) և Գերտի Թերեզա (1896–1957), չեխ կենսաքիմիկոս ամուսիններ: 1922–ից՝ ԱՄՆ–ում: Հետազոտությունները վերաբերում են կենդանիների օրգանիզմներում ածխաջրերի փոխանակությանը: Նկարագրել են գլիկոգենի վերասինթեզը կաթնաթթվից (Կ–ի ցիկլ): Անջատել են գլյուկոզո–1–ֆոսֆատը (Կ–ի եթեր) և հաստատել նրա դերն ածխաջրերի փոխանակության մեջ: Նոբելյան մրց. (1947, կնոջ և Բ. *Ուսայի* հետ):

ԿՈՐԻ, **Կոր, Տկորի**, գվո Մեծ Հայքի Տուրուբերան նահանգ–ում: Աշխարհագր. դիրքն անորոշ է: Տեղադրում են Կորո ձոր կամ Բուլանըք գետի (այժմ՝ Կորսու կամ Քյոռսու–դերեսի) վերին հոսանքի շրջանում:

ԿՈՐԻԶ (կննսբ.), բազմաթիվ միաբջիջ և բազմաբջիջ օրգանիզմների բջջի պարտադիր մասը: Տիպիկ Կ. կազմված է 4 հիմն. մասերից՝ կորիզաթաղանթ, կորիզանյութ կամ կորիզապլազմա, կորիզակ, քրոմատին: Չափերը 1 *մկմ*–ից (որոշ նախակենդանիների բջիջներում) մինչև 1 *մմ* (որոշ ձկների և երկկենցաղների ձվերում): Կառավարում է սպիտակուցների (այդ թվում՝ ֆերմենտների) կենսասինթեզը և դրանց միջոցով բոլոր ֆիզիոլոգ. կենսընթացները բջջում: Ըստ բջիջներում ձևավորված կորիզի առկայության կամ բացակայության՝ օրգանիզմները բաժանում են **էուկարիոտների** և **պրոկարիոտների**:

ԿՈՐԻԶԱԿ, **նուկլեոլ**, պինդ մարմնիկ բջջակորիզի ներսում: Կազմված է հիմնականում ռիբոնուկլեինաթթվի և սպիտակուցների կոմպլեքսից: Մասնակցում է ռիբոսոմների սինթեզին: Սովորաբար բջջում առկա է 1–3 Կ., հազվադեպ՝ մինչև տասնյակներ:

ԿՈՐԻԶԱՊՏՂԱՎՈՐ ՄԾԱԿԱԲՈՒՅՍԵՐ, **կորիզապտղավորներ**, վարդազգիների ընտանիքի սալորայինների ենթաընտանիքի պտղատու բույսեր (ծիրանենի, դեղձենի, բալենի, կեռասենի, սալորենի, շլորենի, մամխենի, դամոնենի ևն):

ԿՈՐԻԶԱՊՏՈՒՂ, բույսերի՝ կարծր, փայտանման կորիզով պտուղ՝ մսալի կամ կաշեկերպ արտաքին շերտով: Միակորիզ կորիզապտղավոր են բալի, նշի, սալորի ևնի, բազմակորիզ՝ ազնվամորու ևնի պտուղները:

ԿՈՐԻՆ Պավել Դմիտրևիչ (1892–1967), ռուս գեղանկարիչ, նկարիչ–վերականգնող: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1962): ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի ակադ. (1958): Հեղինակ է թեմատիկ («Ալեքսանդր Նևսկի», 1942–43, եռապատկեր), մոնումենտալ (Մոսկվայի մետրոպոլիտենի «Կոմսոմոլսկայա–կոլցևայա» կայարանի խճանկարը, 1951, ևն) գործերի, դիմանկարների («Մ. Ս. Սարյան», 1956, «Ռ. Գուտտուզո», 1961, ևն): Կ–ի մարշալ Լ. Ա. Գոլովինի դիմանկարը (1949) ՀԱՊ–ում է: ԽՍՀՄ Պետ. (1952), Լենինյան (1963) մրց–ներ:

ԿՈՐԻՆ Օգատա (1653–1743, այլ տվյալներով՝ 1658–1716), ճապոնացի նկարիչ, գեղ. լաքի վարպետ: Դեկորատիվ գեղանկարչության ճապոն. դպրոցի հիմնադիր («Հիրիկներ» ևն):

ԿՈՐԻՆԵՖԱԿՏԵՐԻԱՆԵՐ (< հուն. koryne – լախտ, մական և *բակտերիաներ*), ցուպիկաձև բակտերիաների խումբ, որոնք առաջացնում են մականաձև, կոկաձև կամ թույլ ճյուղավորված ձևեր:

ԿՈՐԻՈԼԱՆՈՍ (Coriolanus), ըստ հինհռոմ. լեգենդի՝ մ. թ. ա. V դ–ի զորավար և պատրիկ, որն անցել է Հռոմի թշնամիների՝ վոլսկերի կողմը: Գլխավորել է Հռոմը պաշարած վոլսկերի բանակը, սակայն, տեղի տալով մոր և կնոջ խնդրանքին, վերացրել է պաշարումը: Կ–ին է նվիրված Վ. Շեքսպիրի համանուն դրաման և Լ. Բեթհովենի նախերգանքներից:

ԿՈՐԻՈԼԻՍ (Coriolis) Գյուստավ Գասպար (1792–1843), ֆրանսիացի ճարտարագետ, մեխանիկոս: Փարիզի ԳԱ ակադ. (1836): Աշխ–ները վերաբերում են մեքենաների գործողությունների հաշվարկներին, առաձգ. գնդերի բախումներին: Տվել է մարմինների հարաբեր. շարժման տեսության վերջն. ձևակերպումը՝ ներմուծելով *Կորիոլիսի ուժ* և *Կորիոլիսի արագացում* հասկացությունները:

ԿՈՐԻՈԼԻՍԻ ԱՐԱԳԱՑՈՒՄ, **պտտական արագացում**, մարմնի լրիվ արագացման բաղադրիչ, որն առաջանում է պտտվող հաշվարկ. համակարգում մարմնի, օր.՝ Երկրի մակերևույթի վրա շարժվելու դեպքում:

ԿՈՐԻՈԼԻՍԻ ՈՒԺ, *իներցիայի ուժերից*, որը ներմուծվում է՝ շարժվող համակարգի պտույտի ազդեցությունը մարմնի հարաբեր. շարժման վրա հաշվի առնելու համար: Կ. ու. հավասար է կետի զանգվածի և *Կորիոլիսի արագացման* արտադրյալին և ուղղված է այդ արագացման հակառակ ուղղությամբ:

ԿՈՐԻՄԱՋՅԱՆ Էմմա Մուշեղի (1930–2009), արվեստաբան: Արվեստագիտ. դ–ր (1997): Հին ձեռագրեր ընդօրինակող: Համահեղինակ է «Մատենադարանի գեղարվեստական գանձերը» (ռուս., 1976), «Ստարի Կրիմ քաղաքի մերձակայքի Սուրբ Խաչ և Սուրբ Ստեփանոս հայկական եկեղեցիները» (ռուս., 2000), «Հայկական մանրանկարչություն» (1987), հեղինակ՝ «Ղրիմի հայկական մանրանկարչություն (XIV–XVII դդ.)» (ռուս., 1978, 2008), «Բարձր Հայքի մանրանկարչությունը ԺԱ.–ԺԴ. դդ.» (2015) և այլ աշխ–ների:

ԿՈՐԾԱՆԻՉ, մարտ. ինքնաթիռ. նախատեսված է հրթիռագնդացր. սպառազինության միջոցով օդ. թիրախներ ոչնչացնելու եղանակով (օդ. մանևրային մարտերով մարտադաշտի վերևում և մարտավար. թիկունքում) օդում գերակայություն ձեռք բերելու, նաև ցամաք. զորքերին կրակային աջակցություն ցուցաբերելու համար:

ԿՈՐԾԱՆԻՉ ԱՎԻԱՑԻԱ, ՌՕՈՒ–ի տեսակ, նաև ՀՕՊ–ի ռազմաճակատ. ավիացիայի զորատեսակ: Նախատեսված է հակառակորդի ինքնաթիռների և անօդաչու սարքերի ոչնչացման համար՝ օդում գերակայություն ձեռք բերելու, զորքերն ու թիկունքի օբյեկտները պաշտպանելու, ավիացիայի այլ տեսակների մարտ. գործողություններն ապահովելու նպատակով: Օգտագործվում է նաև վերգետնյա (վերջրյա) օբյեկտներ խոցելու և օդ. հետախուզության համար: Զինված է ռեակտիվ գերձայն. ինքնաթիռներով: Կ. ա–ի հիմն. զենքը կառավարվող հրթիռներն ու արագաձիգ թնդանոթներն են:

ԿՈՐԾԱՆԻՉ–ԿԱԼԱՆԻՉ, մարտ. ինքնաթիռ. նախատեսված է թշնամու օդ. հարձակման միջոցների (ինքնաթիռներ, թևավոր հրթիռներ և հրթիռակիրներ) գրոհն «օդ–օդ» դասի հրթիռներով ճնշելու համար:

ԿՈՐԾԱՆԻՉ-ՌՄԲԱԿՈՏԻՉ, մարտ. ինքնաթիռ. նախատեսված է թշնամու թիրախները հրթիռներով, ռումբերով և այլ զինամթերքով (այդ թվում՝ միջուկ.) ոչնչացնելու համար:

ԿՈՐԾԱՆԻՉ-ՌՄԲԱԿՈՏԻՉ ԱՎԻԱՑԻԱ, *ռազմաճակատային ավիացիայի* տեսակ: Նախատեսված է հակառակորդի վերգետնյա և ծով. թիրախները ոչնչացնելու համար, որոնք դժվար խոցելի են ցամաք. զորքերի կրակային միջոցներով, նաև թշնամու ինքնաթիռների և անօդաչու հարձակման միջոցների դեմ պայքարելու, օդ. հետախուզության համար: Կ–ռ. ա. ներառված է ՌՕՈՒ–ի կազմում: Սպառազինված է համապիտանի ռեակտիվ գերձայն. *կործանիչ-ռմբակոծիչներով*:

ԿՈՐԿ Ավգուստ Իվանովիչ (1887–1937), խորհրդ. զորապետ, բանակի 2-րդ կարգի հրամ. (1935): 1917–22-ի քաղաքաց. պատերազմի ժամանակ գլխավորել է (1919–21) 15-րդ և 6-րդ բանակները: 1920–30-ին՝ մի շարք ՋՕ-ների հրամ.: Անհիմն բռնադատվել է, գնդակահարվել:

ԿՈՐԿ (Cork), ք. Իռլանդիայի հվ–արմ–ում, համանուն կոմսության վարչ. կենտրոնը: Բն.՝ 194 հզ. (2010): Հիմնադրվել է VI դ–ում:

ԿՈՐԿՈՍՅԱՆ Քսաներկ Արամի (1927–1999), գրադարանագետ, մատենագետ: Բանասիր. գիտ. թեկնածու (1966): Հեղինակ է «Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում (1567–1850)» (1964) և այլ աշխ-ների, համահեղ.՝ «Հայ գիրքը 1512–1800 թթ.» մատենագիտ–յան:

ԿՈՐՀՈԳՈ (Korhogo), ք. Կոտ դ՚Իվուարի հս–ում, Սավան մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 286 հզ. (2014): Գղտ. շրջանի կենտրոն է:

ԿՈՐՃԱՅՔ, Կորճէք, Կորտիճ այք, Մեծ Հայքի 6-րդ նահգ-ը (շուրջ 14 700 *կմ*²): Ըստ «*Աշխարհացոյց*»-ի՝ Կ. բաղկացած էր 11 գվռ-ից: *Արտաշես Ա*-ի օրոք (մ. թ. ա. 189–160) մտել է Մեծ Հայքի մեջ, Արշակունիների ժամանակ եղել Մեծ Հայքի 4 բդեշխություններից կամ սահմանակալ զորաթևերից մեկը: Օսմ. տիրապետության հաստատումից (XVI դ.) հետո Կ. մտել է Վանի փաշայության Հեքյարի սանջակի, իսկ նրա Կորդուք գվռ-ը՝ Դիարբեքիրի վիլայեթի մեջ: Մեծ եղեռնի ժամանակ հայերի ու ասորիների կոտորածից ու բռնագաղթից հետո Կ. հիմնականում քրդաբնակ է:

ԿՈՐՄԵՐ Սամուիլ Բորիսովիչ (1923–1982), ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1981): Աշխ-ները վերաբերում են բարձր ճնշումների ֆիզիկային, պինդ մարմնի ֆիզիկային, քվանտ. էլեկտրոնիկային:

ԽՍՀՄ Պետ. (1949, 1953, 1980), Լենինյան (1959) մրց-ներ:

ԿՈՐՅԱԿԵՐԵՆ, Նեմիլաներեն, *կորյակների* լեզուն: Պատկանում է հնասիական լեզվաընտանիքի չուկոտյան խմբին: Գրի հիմքում՝ լատ. (1931–37), ապա ռուս. այբուրենն է:

ԿՈՐՅԱԿՆԵՐ, ժողդ ՌԴ-ում, Կամչատկայի մարզի արմատ. բնակչությունը (7,3 հզ.): Ընդհ. թիվը ՌԴ-ում՝ 8,7 հզ. (2002): Լեզուները՝ կորյակերեն և ալյուտորերեն: Ուղղափառ քրիստոնյա են, կան ավանդ. հավատալիքների հետևորդներ:

ԿՈՐՅՈՒՆ (մոտ 380–մոտ 450), մատենագիր, վրդ., Թարգմանչաց շարժման առաջնեկներից: Մեսրոպ Մաշտոցի 1-ին աշակերտներից: Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Ա. Պարթևի հանձնարարությամբ ուսուցանել է Հայաստանի գվռ-ներում, այնուհետև Ասորիքում և Կ. Պոլսում կատարելագործել ասոր-ի և հուն-ի իր իմացությունը: Մասնակցել է Աստվածաշնչի հայ. թարգմ-յանը: Հովսեփ Ա. Հողոցմեցի կաթողիկոսի պատվերով գրել է (443–450) Մեսրոպ Մաշտոցի կենսագրությունը՝ «Վարք Մաշտոցի» երկը (հրտ.՝ 1833, թարգմ.՝ գերմ., ֆրանս., անգլ., ռուս.):

ԿՈՐՅՈՒՆ, Գոմսա Իսո (1870–1915), ազգ–ազատագր. շարժման գործիչ, ֆիդայի: Մասնակցել է Յրոնք գ–ի (1899), Նորաշենի (1901) կռիվներին, 1904-ի Սասունի ապստամբությանը: 1905–06-ի հայ–թաթար. բախումների ժամանակ կազմակերպել է մի շարք գյուղերի ինքնապաշտպ–յունը: 1908–15-ին եղել է Գոմս գ–ի գյուղապետը: Զոհվել է Սասունի հերոսամարտում:

ԿՈՐՆԳԱՆ (Onobrychis), բակլազգիների ընտանիքի խոտաբույսերի, հազվադեպ՝ թփերի ցեղ: Հայտնի է ավելի քան 100 (այլ տվյալներով՝ 130) տեսակ, ՀՀ–ում՝ 21, մշակության մեջ՝ սովոր. կամ միահար, առաջավորասիական կամ բազմահար և ավազասեր տեսակները: Արժեքավոր կերաբույս է (չոր խոտը, կանաչ զանգվածը, ծղոտը):

ԿՈՐՆԹԱԿԱՆ ՕՐԴԵՐ, ճարտ. 3 հիմն. *օրդերներից*: Ունի բարձր սյուն՝ խարսխով, ակոսավոր բնով և շքեղ խոյակով՝ կազմված ականթի տերևների շարքերից և խոյազարդերից:

ԿՈՐՆԹՈՍ, հինհուն. ք–պետություն (Հս. Կորնթոսից 6 *կմ* հեռու): Հիմնադրել են դորիացիները մ. թ. ա. մոտ X դ–ում: Ծաղկել է Կիպսելես և Պերիանդրես տիրակալների օրոք (մ. թ. ա. VII–VI դդ.): Միցակցել է Աթենքի հետ, մասնակցել է հուն. գաղութացմանը:

ԿՈՐՆԹՈՍԻ ԾՈՎ, Հունիական ծովի ծովածոց Հունաստանի արմ. ափերի մոտ: Երկ.՝ 130 *կմ*, լայն. մուտքի մոտ՝ 3 *կմ*, առլզն՝ 35 *կմ*, խոր.՝ մինչև 935 *մ*:

ԿՈՐՆԹՈՍԻ ՊԱՐԱՆՈՑ, Կորնթոս և Սարոնիկոս ծոցերի միջև: Պելոպոնես թ–կղզին կապում է Կենտր. Հունաստանի հետ: Երկ.՝ 42 *կմ*, լայն.՝ մինչև 16 *կմ*: Հատվում է *Կորնթոսի ջրանցքով*:

ԿՈՐՆԹՈՍԻ ՋՐԱՆՑՔ, նավարկելի ջրանցք *Կորնթոսի պարանոցում*, կապում է Էգեյան և Հոնիական ծովերը: Կառուցվել է 1881–93-ին: Երկ.՝ 6,3 *կմ*, լայն.՝ 24,6 *մ*, խոր.՝ 8 *մ*: Կ. ջ-ով տարեկան անցնում է շուրջ 11 հզ. նավ: Կարևոր դեր է խաղում Հունաստանի տնտ-յան մեջ:

ԿՈՐՆԹՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ մ. թ. ա. 395–387, հուն. պոլիսների (Աթենք, Թեբե, Կորնթոս, Արգոս, Ակարնանիա, Մեգարա ևն) միության և Սպարտայի գլխավորած Պելոպոնեսյան միության միջև: Պատճառը հուն. զարգացած պոլիսների՝ Սպարտայի գերիշխանությունից ազատվելու ձգտումն էր: Ավարտվել է Պարսկաստանի միջամտությամբ՝ Անտալկիդեսի հաշտությամբ (մ. թ. ա. 387). Սպարտան Հունաստանի անունից հրաժարվել է հույն-պարսկ. պատերազմի ժամանակ գրաված տարածքներից՝ հօգուտ Պարսկաստանի:

ԿՈՐՉ Ֆեոդոր Եվգեննիչ (1843–1915), ռուս բանաստեղծ: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1900): Աշխ-ները վերաբերում են դաս. բանասիրությանը, հնդեվրոպ. պատմահամեմատ. քերակ-յանն ու տիպաբանությանը, ուգրա-ֆինն. լեզուներին, ուղղագրությանն ու ուղղախոսությանը, արևելասլավոն. գրկ-յանը, տաղաչափությանը:

ԿՈՐՉԱԿ Վասիլի Վլադիմիրովիչ (1908/09–1988), ռուս քիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1976): Աշխ-ները վերաբերում են պոլիկոնդենսմանը, ջերմակայուն պոլիմերների սինթեզի եղանակներին: ԽՍՀՄ Պետ. (1949, 1951), Լենինյան (1986) մրց-ներ:

ԿՈՐՉ-ՍԱԼԼԻՆ Վլադիմիր Վլադիմիրովիչ (1900–1974), բելոռուս կինոռեժ.: Բել. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1935): Բել. ԽՍՀ (1955), ԽՍՀՄ ժող. (1969) արտիստ: Բելոռուս. կինեմատոգրաֆիայի հիմնադիրներից: Նկարահանել է «Առաջին դասակը» (1933), «Երջանկություն որոնողները» (1936), «Կոնստանտին Զասլոնով» (1949, Ա. Մ. Ֆայնցիմերի հետ) և այլ գեղ. ֆիլմեր: ԽՍՀՄ (1950), Բել. ԽՍՀ (1967) Պետ. մրց-ներ:

ԿՈՐՈ (Corot) Կամիլ (1796–1875), ֆրանսիացի գեղանկարիչ: XIX դ–ի ազգ. բնանկարչ. դպրոցի հիմնադիրներից: Հայտնի են «Քամու պոռթկում» (1864–73), «Հոմերոսը և հովիվները» (1845), «Մարգարիտով կինը» (1868–70) և այլ գործեր:

ԿՈՐՈ, ք. Վենեսուելայում, Պարագուանա թ–կղզում, Ֆալկոն նահգ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 265,8 հզ. (2010): Կ-ի հս–ում է երկրի խոշորագույն նավթավերամշակման գործարանը: Հիմնադրվել է 1527-ին:

ԿՈՐՈՐՈՎՆԵՐ, ռուս. մետաղագործների ընտանիք: Հայրը՝ **Իվան Գրիգորևիչ Կ.** (1882–1952), 1930-ական թթ–ին հասել է ԽՍՀՄ-ում դոմնայինև վառարանի օգտ. ծավալի լավագույն օգտագործման: Որդիները՝ **Պավել Իվանովիչ Կ.** (1902–1965), ճարտարագետ, ԽՍՀՄ սև մետաղագործության փոխնախարար: Սոց. աշխ. հերոս (1943): **Իլյա Իվանովիչ Կ.** (1910–1980), ճարտարագետ: Սոց. աշխ. հերոս (1958): Աշակել և ներդրել է թուջի ձուլման նոր տեխնոլոգիա: Լենինյան մրց. (1960):

ԿՈՐՈԼԵՆԿՈ Վլադիմիր Գալակտիոնովիչ (1853–1921), ռուս գրող, հրապարակախոս: Ս. Պետերբուրգի (1900–02), Ռուսաստանի (1918) ԳԱ-ների պատվ. անդամ: 1896–1918-ին՝ «Ռուսսկոյե բոգատստվո» (ռուս.) ամսագրի խմբ.: Հեղինակ է «Մակարի քունը» (1885), «Տարօրինակ աղջիկը» (1893, հայ.՝ 1904) և այլ պատմվածքների, «Կույր երաժիշտը» (1886, հայ.՝ 1901, կինոնկարը՝ 1960), «Անլեզու մարդը» (1895, հայ.՝ 1954) և այլ վիպակների, նաև «Իմ ժամանակակցի պատմությունը» (1922, հայ.՝ 1959) հուշագրության և այլ գործերի:

ԿՈՐՈԼՅՈՎ, Լև Նիկոլաևիչ (1926–2016), ռուս մաթեմատիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1991, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1981-ից): Աշխ-ները վերաբերում են հաշվող. տեխնիկային և մաթ-ին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1969):

ԿՈՐՈԼՅՈՎ, Նիկոլայ Ֆեոդորովիչ (1917–1974), ռուս բռնցքամարտիկ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1942): ԽՍՀՄ բացարձակ (1936–37, 1944–1945), ծանր քաշի 9-ակի (1936–49) չեմպիոն: Համաշխ. բանվ. օլիմպիադայի (1937, Անտվերպեն), Հելսինկիի (1945), Պրահայի (1946) միջազգ. մրցաշարերի հաղթող:

ԿՈՐՈԼՅՈՎ, Սերգեյ Պավլովիչ (1906/07–1966), ռուս կոնստրուկտոր: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1958): Սոց. աշխ. հերոս (1956, 1961): Կ-ի ղեկավարությամբ ստեղծվել են բալիստիկ և երկրաֆիզ. հրթիռներ, առաջին ԵԱԱ-ները, տարբեր նշանակման արբանյակներ («Էլեկտրոն», «Մոլնիա-1», «Կոսմոս», «Զոնդ» ևն), «Վոստոկ», «Վոսխոդ» տիեզերանավերը, որոնցով կատարվել են մարդու

առաջին թռիչքները Տիեզերք: Անհիմն բռնադատվել է, 1938–44-ին՝ բանտարկվել. 1938–39-ին՝ Կոլիմայում, 1942–44-ին՝ Կազանում: Բանտից հանվել է Ի. Վ. Ստալինի հրամանով՝ հրթիռաշինության անհրաժեշտությամբ պայմանավորված:

Լ.Կենինյան մրց. (1957):

ԿՈՐՈԼՅՈՎ (1939–96-ին՝ Կալինինգրադ), ք. ՌԴ Մոսկվայի մարզում: Բն.՝ 175 հզ. (2009): ՌԴ գիտ-յան, հրթիռատիեզ. արդ-յան և թռիչքների կառավարման կենտրոն է: Կոչվել է Ս. Պ. *Կորոլյովի* պատվին:

ԿՈՐՈՄԱ (Koroma) Էռնեստ Բայ (ծ. 1953), Սիեռա Լեոնեի նախագահ՝ 2007–ից: 2002–ից՝ Համաժողովրդ. կոնգրես կուսյան առաջնորդը:

ԿՈՐՈՆԱԴՈ (Coronado) Ֆրանսիսկո Վասկես դե (մոտ 1510–1554), իսպանացի կոնկիստադոր: 1540–41-ին հայտնաբերել է Կոլորադո գետի ավազանը, Մեծ կանիոնը, Ռիո Գրանդե գետի վերին հոսանքի շրջանը: Առաջինն է անցել Մեծ հարթավայրերը՝ մինչև հս. լայն-յան 40º:

«ԿՈՐՈՆԱՎ-Ֆ», ռուս-ուկր. տիեզ. ապարատ, արեգակն. ակտիվության դիտարկման և արեգակնաերկր. կապերի հետազոտման արտամթն. բազմանպատակ աստղադիտարան: Արձակվել է 31.07.2001-ին Պլեսեցկ տիեզերակայանից. 226 *կգ* զանգվածով ապարատը դուրս է բերվել 500 *կմ* բարձր-յամբ երկրակենտրոն ուղեծիր: Բազմաթիվ տվյալներ են ստացվել Արեգակի ԱՄՃ-ման հոսքերի վերաբերյալ: Ջրասույզ է արվել 06.12.2005-ին Հաղ. օվկ-ում:

ԿՈՐՈՆԱՐ... (լատ.՝ coronarius – պսակաձև), բարդ բաների մաս. ցույց է տալիս օրգանը պսակի (corona) ձևով շրջապատելը, սրտի պսակաձև անոթներին վերաբերելը:

ԿՈՐՈՆԱՐԻՏ, սրտի պսակային անոթների պատի բորբոքում՝ կոլագեն. և այլ հիվանդությունների ժամանակ: Հիմն. դրսևորումը *կրծքային հեղձուկն* է:

ԿՈՐՈՆԱՐՈՄՊԱԶՄ (< *կորոնար*... և հուն.՝ spasmos – կծկում), սրտի պսակային անոթների կծկանք, որը հանգեցնում է *կրծքային հեղձուկի* նոպաների՝ պայմանավորված սրտամկանի անբավարար արյունամատակարարմամբ:

ԿՈՐՈԶԿԻՆ Լեոնիդ Իվանովիչ (1935–2006), ռուս սաղմնաբան և գենետիկ: ՌԳԱ թղթ. անդամ (1991): Աշխ-ները վերաբերում են անհատ. զարգացման մոլեկուլագենետիկ. մեխանիզմներին, կենսաքիմ. և նյարդագենետիկային: ՌԴ Պետ. մրց. (1996):

ԿՈՐՈՊՈՒՆԱ (Coropuna), հրաբուխ Անդերի Արմ. Կորդիլիերներում, Պերուի հվ-արմ-ում: Բարձր.՝ 6425 *մ*: Սոլֆատարային վիճակում է:

ԿՈՐՈՎԻՆ Կոնստանտին Ալեքսեևիչ (1861–1939), ռուս գեղանկարիչ, բեմանկարիչ: «Միր իսկուստվա» խմբավորման անդամ: 1923–ից՝ Փարիզում: Վաղ շրջանի նկարչ. ձևերը («Պատշգամբի մոտ», 1886–88, ևն) XX դ-ի սկզբին, ֆրանս. իմպրեսիոնիզմի ազդեցությամբ, ձևափոխել է իմպուլսիվ, վառ դեկորատիվ նկարելաձևի («Փարիզ», 1905, Ֆ. Ի. Շալյապինի դիմանկարը, 1911, ևն): Ստեղծել է թատեր. դեկորացիայի նոր տեսակ (Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Ոսկե աքաղաղ» օպերա, 1909):

ԿՈՐՈՎԻՆ Սերգեյ Կոնստանտինովիչ (ծ. 1945), ռուս մեխանիկոս, էլեկտրոնիկայի և ավտոմատացման բնագավառի գիտնական: ՌԳԱ ակադ. (2000, թղթ. անդամ՝ 1994–ից): Աշխ-ները վերաբերում են հակադարձ կապի տեսությանը և ավտոմատացման համակարգերին: ՌԴ Պետ. մրց. (1994):

ԿՈՐՈՏԵԵՎ Անատոլի Սազոնովիչ (ծ. 1936), ռուս էներգետիկ: ՌԳԱ թղթ. անդամ (1994): Աշխ-ները վերաբերում են ցածրջերմաստիճան. պլազմային, մագնիսազազադինամիկային, էներգ. հատուկ տեղակայանքներին: ԽՍՀՄ (1982), ՌԴ (2002) Պետ. մրց-ներ:

ԿՈՐՈՏԻՉ Վիտալի Ալեքսեևիչ (ծ. 1936), ուկրաինացի գրող: Ամերիկայի արվ-ի և գրկ-յան ակադ-ի անդամ: Գրում է նաև ռուս.: 1986–91-ին՝ «Օգոնյոկ» (ռուս.) ամսագրի գլխ. խմբ.: Հեղինակ է «Կրակ» (1968), «Արժանապատվություն» (1977), «Ընտրանի» (1986) և այլ բանաստեղծությունների ժող-ների, «Մայիսի տասը» (1978) վեպի, «Մետրոնոմ» (1982) վիպակի, Ամերիկայի մասին «Ատելության դեմքը» (1984, ԽՍՀՄ Պետ. մրց., 1985, հայ.՝ 1986) վեպ-նամականու, նաև ուղեգրությունների: Ուկր. ԽՍՀ Տ. Գ. Շևչենկոյի անվ. Պետ. մրց.:

ԿՈՐՈՏԿԵՎԻՉ Վլադիմիր Սեմյոնովիչ (1930–1984), բելառուս գրող: Հեղինակ է «Հասկերը՝ քո մանզաղի տակ» (գիրք 1–2, 1965), «Քրիստոսն իջավ Գորոդնոյում: Հուդայի Աատվածաշունչը» (1972) պատմավեպի, «Օլշանսկի սև ամրոցը» (1979–80, կինոնկար՝ 1984) արկած. և այլ վեպերի, վիպակների, պատմվածքների, «Երկիրը՝ ճերմակ թևերի ներքո» (1977) քնարափիլ. էսսեների, նաև բանաստեղծությունների ժող-ների: Կ-ի մի շարք երկերի հիման վրա նկարահանվել են ֆիլմեր:

ԿՈՐՈՏԿՈՎ Ալեքսեյ Անդրեևիչ (1910–1967), ռուս քիմիկոս-օրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1958): Սոց. աշխ. հերոս (1963): Աշխ-ները վերաբերում են կատալիտիկ պոլիմերմանը, կարգավորված կառուցվածքով կաուչուկների ստացմանը: Լենինյան մրց. (1967):

ԿՈՐՈՏՉԵՆԿՈ Դեմյան Սերգեևիչ (1894–1969), ուկրաինացի պետ. և կուս. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1964): 1939–47-ին՝ Ուկրաինայի Կ(բ)Կ ԿԿ 2-րդ քարտուղար: ՀՄՊ-ի ժամանակ՝ պարտիզան. շարժման կազմակերպիչներից: 1947–ից՝ Ուկր. ԽՍՀ ՆԽ նախագահ, 1954–ից՝ ԳԽ նախագահության նախագահ:

ԿՈՐՉԱԿ (Korczak) Յանուշ (Հենրիկ Գոլդշմիտ, 1878–1942), հրեա լեհագիր գրող, մանկավարժ, բժիշկ: Հեղինակ է «Ինչպես սիրել երեխաներին» (1914–22, հայ.՝ 1981) աշխ-յան, «Փողոցի երեխաները» (1901), «Մաթիուշ Առաջին թագավորը» (1923, հայ.՝ 1964) և այլ վիպակների, զրույցների: Զոհվել է Տրեբլինկայի համակենտրոնացման ճամբարում՝ Վարշավայի գետոյի 200 երեխաների հետ: Հայ. է հրատարակվել նաև «Երբ ես նորից երեխա դառնամ» (1967) վիպակների ու ակնարկների ժող-ը:

ԿՈՐՉՆՈՅ Վիկտոր Լվովիչ (1931–2016), հրեա շախմատիստ: ԽՍՀՄ չեմպիոն (1960, 1962/63, 1964/65, 1970): 1976–ից՝ Շվեյցարիայում: 1962–ից մասնակցել է աշխարհի առաջնության հավակնորդնեի մրցումներին, այդ թվում՝ Ա. *Կարպովի* հետ 2 մրցախաղի: Այդ մասին գրել է իր «Հակաշախմատ» (1981) գրքում:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ավտորիտար քաղ. վարչակարգի ձևերից (տես *Ավտորիտարիզմ*): Կ. պ-յան գաղափարախոսությունը պետությունը դիտում է որպես որոշակի սոցիալ. գործառույթներ կատարող հաս. ծառայությունների միավորում (կորպորացիա): Կ. պ-յան հետևողական հետևորդներից են Բ. Մուսսոլինին՝ Իտալիայում, Ֆ. Ֆրանկոն՝ Իսպանիայում, և ուր.:

ԿՈՐՊՈՐԱՅԻԱ (իրավունք), որևէ նպատակով միավորված անձանց ամբողջություն, իրավաբ. անձ (օր.՝ ԱՄՆ-ում հանր. Կ-ներ են մունիցիպալիտետները, մասնավոր՝ բաժնետիր. ընկ-ները):

ԿՈՐՊՈՒՍ (լատ.՝ corpus – մարմին, ամբողջություն), զորաբանակ, խոշոր զորամիավորում, որի մեջ մտնում են մի քանի զորամաս, հատուկ զորքեր ևն: Առաջիններն ստեղծվել են Ռուսաստանում և մի շարք եվրոպ. երկրներում XVIII դ-ի սկզբին: Հայկ. Կ. կամ Հայոց ազգ. Կ. գործել է 1917–18-ին ռուս. բանակի կազմում՝ գեն. Թովմաս *Նազարբեկյանի* հրամանատարությամբ: ՀՀ ազգ. բանակը նույնպես կազմված է բանակ. Կ-ներից:

ԿՈՐՊՈՒՍ ՔՐԻՍՏԻ (Corpus Christi), ք. ԱՄՆ-ի Տեխաս նահ-ում, նվիհգստ Մեքսիկ. ծոցի ափին: Բն.՝ 305 հզ. (2010): Նավթագազարդյունահանման շրջանի կենտրոնն է, ծով. առողջարան:

ԿՈՐՊՈՒՍԿՈՒԼ-ԱԼԻՔԱՅԻՆ ԵՐԿՎՈՒԹՅՈՒՆ, պնդում այն մասին, որ նյութի բոլոր միկրոմասնիկները (ֆոտոններ, էլեկտրոններ, պրոտոններ, ատոմներ ևն) ունեն միաժամանակ մասնիկի (կորպուսկուլ) և ալիքի հատկություններ: Քանակ. արտահայտությունը *Դը Բրոյլի* ստացած առնչություններն են:

ԿՈՐՍԱԿՈՎ Ալեքսանդր Իվանովիչ (1751–1821), հրետան. զորքերի ռուս գեն. (1800): 1784–87 և 1788–99-ին ծառայել է հրետան. և ինժեներ. կաղետ. կորպուսում (1797–99-ին՝ տնօրեն), 1798–1803-ին՝ հրետան. ռազմարշավի ղեկ., 1800–03-ին՝ հրետանու տեսուչ, 1803–11-ին՝ Լեռն. կորպուսի տնօրեն, 1803–ից՝ սենատոր: Նրա արմ-եվրոպ. գեղանկարների պատկերասրահը Ս. Պետերբուրգում համարվել է լավագույններից:

ԿՈՐՍԱԿՈՎ Սերգեյ Սերգեևիչ (1854–1900), ռուս հոգեբույժ, հոգեբուժության մեջ նոզոլոգիական ուղղության և հոգեբույժների մոսկովյան դպրոցի հիմնադիրներից: Նկարագրել է (1897) *կորսակովյան համախտանիշը*: Հեղինակ է «Հոգեբուժության դասընթացներ» (1893) դասագրքի:

ԿՈՐՍԱԿՈՎՅԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ, դրսևորվում է հիշողության (գլխավորապես՝ ընթացիկ իրադարձությունների վերաբերյալ և կեղծ հիշողություններով), ժամանակի ընկալման խանգարումներով, հաճախ զուգակցվում է բազմանյարդաբորբով և Վեռնիկեի էնցեֆալոպաթիայով, թափառող և ստոծանու նյարդերի ախտահարումով (կարող է հանգեցնել մահացու ելքի): Կոչվել է Ս. Ս. *Կորսակովի* անունով:

ԿՈՐՍԻԿԱ, (Corse), կղզի Միջերկր. ծովի հս-ում: Պատկանում է Ֆրանսիային: Տարածքը՝ 8,7 հզ. *կմ*^{2} է, բն.՝ 314,4 հզ. (2011): Երկ.՝ 183 *կմ*, լայն.՝ մինչև 85 *կմ*: Կղզու մեծ մասն զբաղեցնում է միջօրեականի ուղղությամբ ձգվող և գետահովիտներով խիստ մասնատված լ-շղթան (բարձր.՝ մինչև 2710 *մ*, Մոն Սենտո լ.): Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, մերձարևադարձ.

բույսերի մշակությամբ ևն: Զարգացած է գրոսաշրջությունը: Գլխ. ք–նվինգստ–ը՝ *Այաչո*: Կ–ում է ծնվել *Նապոլեոն I*-ը:

ԿՈՐՄԻԿԱՅԻՆԵՐ (ինքնանվանումը՝ կորսի), ժողդ, *Կորսիկա* կղզու (Ֆրանսիա) հիմն. բնակչությունը (300 հզ.): Ապրում են նաև Իտալիայում (1,6 հզ.), Մարոկկոյում, ամերիկ. որոշ երկրներում, Նոր Կալեդոնիայում, Մադագասկարում և Իսրայելում: Լեզուն՝ կորսիկերեն: Կաթոլիկ են:

ԿՈՐՍԻԿԵՐԵՆ, հնդեվրոպ. լեզվաընտանիքի ռոման. ճյուղի լեզու: Հաճախ Կ–ին իտալ–ի տոսկան. և հվ. բարբառների հետ ունեցած կառուցվածք. նմանության հիման վրա դասում են իտալ. բարբառների շարքը: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ԿՈՐՄՈՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ, տեղի է ունեցել 1648–54–ի ուկրաինացի և բելոռուս ժողդ–ների ազատագր. պատերազմի ընթացքում [15–16 (25–26). 5. 1648]: Ուկրաինացի կազակների զորքերը (հրամ.՝ Բ. Մ. *Խմելնիցկի*, 15–20 հզ. մարդ) և նրանց դաշնակից Ղրիմի թաթար. հեծելազորը (հրամ.՝ Թուգայ–բեյ, 4–20 հզ. մարդ) Կորսուն ք–ի մոտ (այժմ՝ ք. Կորսուն–Շևչենկովսկի, Ուկրաինա) պարտության են մատնել լեհ–լիտվ. զորքերին (20 հզ. մարդ, հրամ–ներ՝ Ն. Պոտոցկի, Մ. Կալինովսկի): Ջոհվել կամ գերի է ընկել գրեթե ողջ լեհ–լիտվ. զորքը:

ԿՈՐՎԱԼԱՆ (Corvalán) Լուիս (1916–2010), չիլիացի քաղ. գործիչ: 1958–89–ին՝ Չիլիի կոմկուսի ԿԿ գլխ. քարտուղար: 1969–ին այցելել է ՀԽՍՀ: 1973–ի ռազմ. հեղ–ից հետո ձերբակալվել է և բանտարկվել: 1976–ին ազատվել է և տարագրվել: Լենինյան միջազգ. մրց. (1975):

ԿՈՐՎԵՏ (ֆրանս.՝ corvette), 1. XVII–XIX դդ–ի առագաստ. ռազմ. նավատորմի թեթև առագաստանավ, որը նախատեսված էր հետախուզ. և այլ օժանդակ գործողությունների համար: 2. ԵՀՊ–ի ժամանակ բրիտ., ամերիկ. և այլ ռազմ. նավատորմերում հակաասուզանավ. և ՀՕՊ–ի ռազմանավերը: 3. Բազմաթիվ պետությունների ՌԾՈՒ–ի ժամանակակից մարտանավ: Զրատարողությունը՝ մինչև 1600 *տ*, արագությունը՝ 20–30 հանգույց: Սպառազինությունը՝ հականավ. և զենիթահրթիռ., զենիթահրետան. համալիրներ, ռեակտիվ ռմբանետներ, խորջրյա ռումբեր ևն:

ԿՈՐՎԻՋԱՐ (Corvisart) Ժան (1775–1821), ֆրանսիացի բժիշկ, թերապևտների գիտ. դպրոցի հիմնադիրը Ֆրանսիայում: Ախտանշանագիտ–յան (սեմիոտիկա) ստեղծողներից է: Գործնականում ներդրել է ընդբախումը (պերկուսիա): Աշխ–ները վերաբերում են սրտի և անոթների հիվանդություններին:

ԿՈՐՏ (Cort) Հենրի (1740–1800), անգլիացի մետաղագետ: Մշակել է (1783) ձևավոր երկաթի գլոցման եղանակ, կատարելագործել (1784) *պուդլինգման* շարժընթացները:

ԿՈՐՏ Մարգարետ (ծ. 1942), ավստրալիացի մարզուհի (թենիս): «Մեծ սաղավարտ» մրցաշարի հաղթող (1971): Ընդհ. առմամբ հաղթել է «Մեծ սաղավարտի» 24 մրցաշարի (1960–73) մենախաղերում:

ԿՈՐՏ Վլադիմիր Գրիգորևիչ (1913–1994), օվկիանոսագետ: ՌԳՄ. թղթ. անդամ (1979): Ռուսաստանի գիտ. վաստ. գործիչ (1973): Աշխ–ները վերաբերում են ջրագրության, ծով. հոսանքների շարժի, օվկ–ի և մթն–ի խոշորածավալ փոխազդեցության հարցերին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1970, 1977):

ԿՈՐՏ (անգլ.՝ court), մարզ. խաղահրապարակ՝ 40 x 20 *մ* չափերով, թենիս խաղալու համար: Մեջտեղում ամրացված է ցանց, ծածկույթը լինում է կավավազ., խոտ., սինթետիկ:

ԿՈՐՏԱԱՄԱՐ (Cortázar) Խուլիո (1914–1984), արգենտինացի գրող: Հեղինակ է արտասովոր–առեղծված., հոգեբ., փիլիսոփայիդանշ տարրերով հագեցած «Վիճակախաղ» (1960, հայ.՝ 1983), «Դասականներ խաղալ» (1963), «62 մոդել հավաքման համար» (1967), «Մանուելի գիրքը» (1973), «Քննություն» (հրտ.՝ 1986) և այլ վեպերի, «Խաղի վերջը» (1956, հայ.՝ 1996), «Գաղտնի զենք» (1959) և այլ պատմվածքների ժողների, նաև բանաստեղծությունների: Հայ. հրատարակվել են նաև «Պատմվածքներ» (2010), «Բանաստեղծություններ» (2011), «Այստեղ և հիմա» (2012, պատմվածքներ) ժող–ները: Կ–ի մի շարք երկերի հիման վրա նկարահանվել են ֆիլմեր:

ԿՈՐՏԵՍ (Cortés) Էռնան (Հեռնան, 1485–1547), իսպանացի կոնկիստադոր: 1504–1519–ին ծառայել է Կուբայում: 1519–21–ին գլխավորել է ռազմ. արշավանքը Մեքսիկա, 1521–ին հիմնադրել է Մեխիկո ք–ը և հաստատել իսպ. գաղութատիրություն: 1522–28–ին՝ իր նվաճած Նոր Իսպանիայի (Մեքսիկա) գեն–կապիտան և նահանգապետ:

ԿՈՐՏԻԿՈ... (լատ.՝ cortex – կեղև), բարդ բառերի մաս. ցույց է տալիս կեղևին, կեղևանայթին վերաբերելը (գլխուղեղի մեծ կիսագնդերի, մակերիկամի *կեղև*):

ԿՈՐՏԻԿՈՍՏԵՐՈԻԴՆԵՐ, մարդու և կենդանիների մակերիկամներում արտադրվող հորմոններ: Կարգավորում է հանք. փոխանակությունը (այսպես կոչված՝ միներալոկորտիկոիդներ՝ ալդոստերոն, կորտեքսոն) և ածխաջրերի, սպիտակուցների ու ճարպերի (այսպես կոչված՝ գլիկոկորտիկոիդներ՝ հիդրոկորտիզոն, կորտիզոն, կորտիկոստերոն), որոնք ազդում են նաև հանք. փոխանակության վրա: Օգտագործում են բժշկության մեջ՝ օրգանիզմում դրանց անբավարարության (օր.՝ ադիսոնյան հիվանդություն) դեպքում, նաև որպես հակաբորբոք. ու հակաալերգ. միջոց:

ԿՈՐՏԻԼԱՆԴՏ Ֆրեդերիկ Հերման Հենրի (ծ. 1946), նիդեռլանդացի լեզվաբան, հայագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1972), պրոֆ. (1972): Հեղինակ է պատմ. ինչյունաբանությանը, ձևաբանությանը և համեմատ. ժամանակագրության խնդիրներին վերաբերող հայերենագիտ. աշխ–ների («Ակնարկ հայերենի քմայնացման շուրջ», 1975, «Նոթեր հայերենի պատմական ինչյունաբանության», պր. 1–4, 1976–84, «Աղվաներեն և հայերեն», 1980, ևն):

ԿՈՐՏՅԱՆ ՕՐԳԱՆ [իտալացի հյուսվածաբան Ա. Կորտիի (A. Corti) անունով], ողնաշարավոր կենդանիների և մարդու ձայնընկալման ապարատի ծայրամաս. հատվածը՝ ականջի խխունջի մեջ: Ձայն. տատանումները վերափոխում է նյարդ. գրգռվածության:

ԿՈՐՏՈ (Cortot) Ալֆրեդ (1877–1962), ֆրանսիացի դաշնակահար, դիրիժոր: 1897–ից մենակատար՝ անսամբլներում, նաև եռյակի կազմում՝ Ժ. Տիբոյի և Պ. Կազալսի հետ (1936–ին՝ հյուրախաղ ԽՍՀՄ–ում): «Էկոլ Նորմալ»–ի (Փարիզ) հիմնադիրներից (Ա. Մանժոյի հետ, 1919):

ԿՈՐՈՒԹՅՈՒՆ, 1. (մաթ.) մեծություն, որը բնութագրում է կոր գծի (կամ մակերևույթի) շեղումը շոշափողից (շոշափող հարթությունից): 2. (ֆիզ.) պատկերի դաշտի Կ. օպտիկ. համակարգի *աբեռացիա*, այսինքն՝ հարթ առարկայի հատուկ պատկերն ստացվում է կորացած մակերևույթի, այլ ոչ թե հարթության վրա, ինչպես պետք է լիներ իդեալ. համակարգում: 3. (Խոսակց.) աղեղնաձևություն, ալիքավորություն:

ԿՈՐՈՆԴ (գերմ.՝ Korund), օքսիդների դասի միներալ՝ Al_2O_3: Աննշան խառնուրդների ձևով պարունակում է Cr, Fe, Ti ևն: Հիմնականում անգույն է, սակայն խառնուրդների շնորհիվ ստանում է տարբեր երանգներ, կարմիր (Cr)՝ ռուբին, կապույտ (Ti)՝ շափյուղա, դեղին (Fe)՝ արլ. տոպազ ևն: Կարծր.՝ 9, խտ.՝ շուրջ 4 *գ/սմ*^{3}: Կ–ի գեղեցիկ երանգներով թափանցիկ բնական բյուրեղները հին ժամանակներից կիրառվել են որպես թանկարժեք քարեր: Հղկանյութ է: Արհեստ. Կ. օգտագործվում է ոսկերչ. գործում, ժամացույցներում և այլ ճշգրիտ սարքերում:

«ԿՈՐՈՒՍՅԱԼ ՍԵՐՈՒՆԴ» (անգլ.՝ Lost Generation, ֆրանս.՝ Génération perdue), գր. հոսանք ԱՄՆ–ում, նաև Արմ. Եվրոպայում: Ներկայացուցիչներն իրենց երկերում արտահայտել են 1914–18–ի աշխարհամարտի ողբերգությունը, խոր հիասթափությունը քաղաքակրթությունից: «Կ. ս.»–ի ներկայացուցիչներին (Է. Հեմինգուեյ, Ու. Ֆոլկներ, Ջ. Դ. Փասոս, Ֆ. Ս. Ֆիցջերալդ, Է. Մ. Ռեմարկ, Ջ. Հ. Օ'Հարա, Ն. Ուեսթ, Շ. Անդերսոն) բնորոշ է ստոիկյան հոռետեսությունը: 1930–ական թթ–ին «Կ. ս.» կորցրել է իր արդիականությունը:

ԿՈՐՖ (Korff) Անդրեյ Նիկոլաևիչ (1831–1893), բարոն, ռուս. հետևազորի գեն. (1892), գեն–համիարզ (1879) (ծագումով՝ լատիշ): Մերձամուրի գեն–նահանգապետ և ՋՕ հրամ. (1884–93): Նպաստել է Հեռավոր Արևելքում նավագնացության զարգացմանը, Անդրսիբիր. մայրուղու (Ուսուրիյսկի երկթղ.) 1–ին տեղամասի շին–յանը:

ԿՈՐՖ Մոդեստ Անդրեևիչ (1800–1876), բարոն, կոմս (1872), ռուս. պատմաբան, իսկական պետ. խորհրդական (1854) (ծագումով՝ լատիշ): Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. անդամ (1852/53): Պետ. խորհրդի անդամ (1843–ից), Օրենքների դեպարտամենտի նախագահ (1864–72): 1840–60–ական թթ–ին դասավանդել է Նիկոլայ I–ի և Ալեքսանդր II–ի որդիներին: Կայսեր. հանրային գրադարանի տնօրեն (1849–61): Աջակցել է Սոսկվայի հանրային գրադարանի (այժմ՝ Ռուսաստանի պետ. գրադարան) ստեղծմանը (1861): Նորին կայսեր. մեծության անձն. գրասենյակի 2–րդ բաժանմունքի գլխ. կառավարիչ (1861–64): Հեղինակ է հուշերի (հրտ. հատվածաբար՝ 2003), «1825–ի դեկտեմբերի 14–ի պատմական նկարագրություն» (3–րդ հրտ., 1857), «Կոմս Սպերանսկու կյանքը» (հ. 1–2, 1861) երկերի՝ Ռուսաստանի և եվրոպ. միապետների կենսագրությունների:

ԿՈՐՖ Նիկոլայ Անդրեևիչ (1710–1766), բարոն, ռուս. պետ. գործիչ, գեն–անշեֆ (1762): 1742–ին Ռուս. կայսրություն է բերել Ելիզավետա Պետրովնա կայսրուհու զարմիկին՝ Կառլ Պետեր Ուլրիխին՝ ապագա Պյոտր III կայսրին: 1744–ին ղեկավարել է նախկին կայսեր՝ Իվան VI Անտոնովիչի ընտանիքի աքսորավայր փոխադրումը: 1758–60–ին՝ Պրուսիայի նահանգապետ. նրա իրավասությունները տարածվել են Յոթնամյա պատերազմի (1756–63) ժա-

մանակ Պրուսիայի թագավորությունից նվաճված տարածքի վրա, որը 1758–62-ին մտել էր Ռուս. կայսրության մեջ: 1760–62-ին՝ Ս. Պետերբուրգի գլխ. ոստիկանապետ, 1762–63/64-ին՝ Ռուսաստանի ոստիկանության վերահսկողության գլխ. տնօրեն: Կողմնակից է եղել Պյոտր III-ի դեմ 1762-ի դավադրությանը:

ԿՈՐՖ Սերգեյ Ալեքսանդրովիչ (1876–1924), ռուս. իրավագետ: 1918-ից՝ վտարանդի ԱՄՆ-ում: Հեղինակ է «Ազնվականությունը և նրա դասային կառավարումը հարյուրամյակի ընթացքում՝ 1762–1855 թթ.» (1906), «Ֆեդերալիզմ» (1902, 1917), «Իշխանությունը և հեղափոխությունը Ռուսաստանում» (1923) աշխ-ների:

ԿՈՐՖԻ ԾՈՑ, Բերինգի ծովում՝ Կամչատկա թ–կղզու հվ–արլ–ում, 75 *կմ* խորացած է մայրցամաքում. լայն. մուտքի մոտ՝ 70 *կմ*, խոր.՝ մինչև 70 *մ*: Ծոց են թափվում բազմաթիվ գետեր: Կոչվել է (1885) Մերձամուրյան երկրամասի 1-ին նահանգապետ Ա. Ն. *Կորֆի* պատվին:

ԿՈՐՖՈՒԻ ՀՌՉԱԿԱԳԻՐ, ստորագրել են (20.7.1917) Կորֆու կղզում (Կերկիրա)՝ Սերբիայի վարչապետ Ն. Պաշիչը և Հարավսլավ. կոմիտեի նախագահ Ա. Տրուբիչը: Նախատեսել է ԱՀՊ-ից հեռո անկախ պետության մեջ միավորել Սերբիան և Ավստրո-Հունգարիայի հարավսլավ. հողերը՝ *Կարագեորգիևիչների* հարստության գլխավորությամբ: 1917-ի օգոստ-ին Կ. հ-ին է վերամիավորվել Չեռնոգորիայի ազգ. միավորման կոմիտեն:

ԿՈՑԲԵԳ (Kocbek) Էդվարդ (1904–1981), սլովեն գրող: Սլովենիայի ազատագր. ճակատի կազմակերպիչներից: Հեղինակ է էքսպրեսիոնիստ. «Երկիր» (1934) կրոնամիստիկ. տրամադրություններով հագեցած բանաստեղծությունների, «Սարսափ» (1963), «Զեկույց» (1969), քաղաքաց. և փիլ–քնար. «Վախ և արիություն» (1951) նովելների ժող-ների, «Վկայություն» (1967) վավերագր–հուշագրության, փիլ. էսսեների:

ԿՈՑԵԲՈՒ Օտտո Եվստաֆովիչ (1787–1816), ռուս. ծովագնաց, 1-ին կարգի կապիտան (1829): 1903–06-ին՝ Ի. Ֆ. Կրուզենշտեռնի շուրջերկրյա ռազմագիտ. արշավի մասնակից: 1815–18-ին ղեկավարել է «Ռյուրիկ» նավով արշավը, 1823–26-ին՝ «Ձեռնարկություն» նավի շուրջերկրյա նավարկությունը: Խաղաղ օվկ-ում հայտնագործել է մի շարք կղզիներ, Արմ. Ալյասկայում՝ ծոց, ավարտին է հասցրել Սյուարդ թ–կղզու հետազոտությունը:

ԿՈՑԵԲՈՒԻ ԾՈՑ, Չուկոտի ծովի ծոց Ալյասկայի արմ. ափերի մոտ: Երկ.՝ 330 *կմ*, լայն.՝ 54–130 *կմ*, խոր.՝ 13–25 *մ*: Տարվա մեծ մասը ծածկված է սառույցով: Կոչվել է Օ. Ե. *Կոցեբուի* պատվին:

ԿՈՑՅՈՒԲԻՆՍԿԻ Միխայիլ Միխայլովիչ (1864–1913), ուկրաինացի գրող, հաս. գործիչ: Քնարահոգեբ. նովելների վարպետ: Հեղինակ է «Ծիծաղ» (1906), «Ճանապարհին» (1907), «Քուն» (1911), «Ինչ է գրված կյանքի գրքում» (1911) և այլ նովելների, «Մոռացված նախնիների ստվերները» (1912, համանուն կինոնկար՝ 1965, ռեժ.՝ Սերգեյ Փարաջանով) և այլ վիպակների: «Fata morgana» (մաս 1, 2, 1904, 1910) վիպակում և 1905–12-ին գրած մյուս գործերում պատկերել է 1905–07-ի հեղ-ը և ուկր. գյուղի դասակարգ. շերտավորումը:

ԿՈՑՅՈՒԵՎ, Արսեն Բորիսովիչ (1872–1944), օս գրող: Օս. գեղ. արձակի հիմնադիրներից: Հեղինակ է «Երազեցին», «Ընկեր» և այլ պատմվածքների, կոլեկտիվացման պայքարը պատկերող «Ջանասպի» (1940) վիպակի:

ԿՈՔՍ (գերմ.՝ Koks, < անգլ. coke), պինդ ածխաջրածն. մնացորդ, ստանում են բնական վառելանյութերի (հիմնականում՝ քարածխի), ինչպես նաև որոշ նավթամթերքների (օր.՝ *գուդրոնի*) *կոքսացմամբ*: Պարունակում է 96–98 % ածխածին:

ԿՈՔՍԱԳԱԶ, այրվող գազ, քարածխի *կոքսացման* արգասիքներից: Բաղկացած է H_2, CH_4, CO և այլ գազերից: Վառելանյութ է (այրման ն.զ.զն ջերմությունը՝ 18–18,5 *ՄՋ/մ*^{3}), հումք է քիմ. արդ-յան մեջ:

ԿՈՔՍԱԿԻ ՎԻՐՈՒՍՆԵՐ [Կոքսակի (Coxackie) բ–ի անվանումից, Նյու Յորքի նահց, ԱՄՆ], ՌՆԹ պարունակող վիրուսներ, որոնք առաջացնում են կլինիկորեն տարբեր դրսևորումներով հիվանդություններ:


ԿՈՔՍԱՅՈՒՄ, բնական վառելանյութերի (գլխավորապես՝ քարածխի) ջերմ. վերամշակման արդ. եղանակ՝ *կոքս* ստանալու նպատակով: Քարածխի Կ. կատարվում է առանց օդի մուտքի՝ մինչև 1450°C տաքացնելիս (կողմնակի արգասիքներն են *կոքսագազը*, քարածխային խեժը), իսկ նավթամթերքների Կ.՝ 470–540°C-ում և 0,2–0,6 *ՄՊա* ճնշման տակ:

ԿՈՕՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՑԱՆՑ (տեղագր.), ուղղանկյուն կոորդինատների առանցքներին զուգահեռ (քարտեզի մասշտաբում՝ ամեն 1 կամ 2 *կմ*-ը մեկ) տարված և ուղղանկյուն ցանց կազմավորող ուղղահայաց ուղիղների համախումբ:

ԿՈՕՐԴԻՆԱՏԱՅԻՆ ԴԵՏԵԿՏՈՐՆԵՐ, **մասնիկների դետեկտորներ**, որոնցով որոշում են նրանց հետագիծը: Լինում են հետագծային (Վիլսոնի, պղպջակային, պլազմային, միջուկ. լուսաէմուլս. խցիկներ ևն), որոնցում նկարահանվում են մասնիկների հետագծերը (հետքերը), հեռադիտակային (Գեյգերի հաշվիչի, սցինտիլյացիոն և կիսահաղորդչ. դետեկտորների հեռադիտակներ) և բազմաէլեկտրոդային (համեմատ. խցիկ ևն), որտեղ մասնիկների հետագծի կոորդինատները որոշում են դետեկտորների կամ էլեկտրոդների տեղադրությամբ՝ ազդանշանի առաջացման տեղում:

ԿՈՕՐԴԻՆԱՏԱՉԱՓ, ուղղանկյուն կոորդինատ. ցանցով տեղագր. քարտեզների վրա կոորդինատ. կետերի չափման և հայտնի կոորդինատներով կետերը քարտեզի վրա անցկացնելու համար կիրառվող սարք: Օգտագործվում է հրետանու, ծով. գործում և տպագրության մեջ:

ԿՈՕՐԴԻՆԱՏՆԵՐ (< լատ. co – համատեղ և ordinatus – կարգավորված, որոշված), թվեր, որոնցով որոշվում է կետի դիրքը հարթության, մակերևույթի վրա կամ տարածության մեջ: Հարթության վրա կետի ուղղանկյուն (դեկարտ.) Կ-ի տրման իմաստը M կետի $\underline{O}M = OP$ (= x՝ աբսցիսը) և $PM = O\underline{Q}$ (= y՝ օրդինատը) հեռ-յունները «+» կամ «–» նշանով օժտելն է 2 փոխուղղահայաց Ox և Oy (Կ-ի առանցքներ) ուղիղներից (նկ. 1): Տարածության մեջ Կ-ի համակարգը 3 փոխուղղահայաց հարթություններ են (նկ. 2), որոնց նկատմամբ M կետի դիրքը որոշվում է 3 Կ-ով՝ x-ով (աբսցիս), y-ով (օրդինատ), z-ով (ապլիկատ): 2 դեպքում էլ O կետն անվանում են Կ-ի սկզբնակետ: Հարթության վրա M կետի բևեռ. Կ. են O սևեռված կետից (բևեռ) OM = r հեռ-ը և POM = φ անկյունը OM-ի ու OP բևեռ. առանցքի միջև (նկ. 3, r-ը շառավիղ վեկտորն է, φ-ն՝ բևեռ. անկյունը): Տարածության մեջ բևեռ. Կ-ի նմանակներն են **գլանային Կ. և գնդային Կ.**: Մակերևույթների վրա կիրառվում են կորագիծ Կ. (օր.՝ երկրչփ. Կ. գնդի վրա որոշվում են երկայն–յամբ և լայն–յամբ):



ԿՈՕՐԴԻՆԱՏՆԵՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ, **լայնություն** և **երկայնություն**, անկյուն. մեծություններ, որոնցով որոշում են կետի դիրքը Երկրի մակերևույթի վրա: Աշխարհագր. լայն-ը չափվում է այն անկյունով, որը կազմում է տվյալ կետով անցնող ուղղաձիգը հասարակածի հարթության հետ (MCN): Հաշվվում են 0–90°-ով՝ հասարակածից հս և հվ: Երկայն–յունը չափվում է այն անկյունով, որը տվյալ կետի միջօրեականի հարթությունը կազմում է պայմանականորեն սկզբն. («առաջին», «գրոյական») ընդունված միջօրեականի հետ (OCN):

ԿՈՕՐԴԻՆԱՏՈՆ ԹԻՎ, 1. (բյուրեղագիտ.) բյուրեղում տվյալ ատոմին կամ իոնին մոտ միևնույն հեռ-յամբ հարևան ատոմների կամ իոնների թիվը: 2. (Քիմիա) կենտր. իոնին միացած *լիգանդների* թիվը *կոմպլեքսային միացություններում*:

ԿՈՕՐԴԻՆԱՑԻՈՆ ԿԱՊ, դոնորակցեպտորային **կապ**, քիմ. կապի տեսակ: Բնորոշ է *կոմպլեքս միացություններին*: Պայմանավորված է լիգանդի (դոնորի) լրացված էլեկտրոն. օրբիտալի՝ էլեկտրոն. զույգի անցումով կենտր. ատոմի ազատ օրբիտալին՝ առաջացնելով ընդհ. կապող մոլ. օրբիտալներ:

ԿՈՕՐԴԻՆԱՑՎԱԾ ԺԱՄԱՆԱԿ, **համաշխարհային կոորդինացված ժամանակ** (UTC), ժամանակի հաշվարկման համակարգ. որոշվում է ատոմ. ժամանակի (տես *Վայրկյան*) համակարգում գործող ժամացույցների ցուցմունքների փոփոխությամբ + 1 *վ*-ով, այնպես, որ Կ. ժ-ի և համաշխ. ժամանակի տարբերությունը չգերազանցի 0,9 *վ*: 31.12.2005-ին ավելացվել է հերթական *վ*-ը, և համաշխ. ու ատոմ. ժամանակների տարբերությունը դարձել է 33 *վ*: Ժամանակի ծառայությունների հաղորդած ճշգրիտ ժամանակի ազդանշանները համապատասխանում են համաշխ. Կ. ժ-ի սանդղակին:

ԿՈՖԵԻՆ, ալկալոիդ, պարունակվում է սրճենու, թեյի տերևներում, կոլայի ընկույզներում: Ունի կենտր. նյարդ. և սիրտանոթ. համակարգերը գրգռող ազդեցություն: Օգտագործում են որպես խթանիչ միջոց՝ թմրանյութերով թունավորման և այլ դեպքերում:

ԿՈՖԵՐՄԵՆՏՆԵՐ, ոչ սպիտակուցային բնույթի օրգ. միացություններ, որոնք մտնում են որոշ ֆերմենտների կազմի մեջ: Ապոֆերմենտի հետ միանալով՝ Կ. առաջացնում են կատալիտիկ ակտիվ կոմպլեքսներ: Մի շարք Կ. վիտամինների (B_1, B_2, B_6 ևն) ածանցյալներ են, պարունակվում են բուս. և կենդ. հյուսվածքներում: Կարևորագույն Կ-ից է A (KoA) կոֆերմենտը, որը կենդանի բջիջներում մասնակցում է օքսիդացման ռեակցի-

աներին, ճարպաթթուների, լիպիդների ևնի սինթեզին:

ԿՊՉԱՆՆԵՐ (Echineidae), ձկների ընտանիք: Հայտնի է 7 տեսակ՝ տարածված Համաշխ. օվկ–ի արևադարձ. և մերձարևադարձ. ջրերում: Մարմինն իլիկաձև է, գլուխը՝ տափակ, որի վրա տեղակայված է մեջքի առաջին լողակից ձևավորված ծծանը, որի օգնությամբ կպչում են խոշոր ձկներին (օր.՝ շնաձկներին), կետերին, նավերի հատակին: Երբեմն պոկվում են «տիրոջից»՝ կեր հայթայթելու համար: Ղազերնակները Կ. օգտագործում են որպես խայծ՝ մեծ ձկներ և կրիաներ որսալու համար:

ԿՊՉՈՒԿ (Lappula), գաղտրիկազգիների ընտանիքի, հիմնականում՝ միամյա, երբեմն՝ երկամյա, հազվադեպ՝ բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 50 տեսակ, ՀՀ–ում՝ 7 (փշապտուղ, չոված, խոնարհված, նստածաղիկ ևն)՝ Արագածոտնի, Գեղարքունիքի, Շիրակի և այլ մարզերում:

ԿՈՒԱԶԳՈՒՄ, 1. խառը դրոշմման գործողություն, երբ հարթ նախապատրաստվածքից ստանում են սնամեջ դետալ: Այս եղանակով պատրաստում են վառարաններ, սարքերի իրաններ ևն: 2. Դարբնոց. գործողություն, երբ լայնության փոքրացման հաշվին նախապատրաստուկը երկարում է: 3. Գլոցումից առաջացող ձևախախտման տեսակ:

ԿՈՒԱՆՅԱՆ Անդրանիկ Արմենակի (ծ. 1929), աստվածաբան, մանկավարժ, խմբ.: Ծ. վրդ. (2001): 1973–2013–ին՝ *«Մասիս»*, 1980–91–ին, միաժամանակ՝ «Զուարթնոց» պարբ–ների, 1991–ից՝ *«Հայկազեան հայագիտական հանդես»*–ի պատ. խմբ.: Հեղինակ է «Գրաբար (քերականութիւն եւ հրահանգ): Ոճաբանութիւն: Հատընտիրք» (1968) դասագրքի, «Գործնական բառարան հայերէն լեզուի» (1970) բառարանի, «Անապահով օրեր» (1999), «Լուսարձակդ բաց վրաս» (2000), «Զմմառ: Դարերու ընթացքին» (հայ., ֆրանս., 1979), «Խօսէ՛ ինծի Հայ եկեղեցիի մասին» (2012) աշխ–ների, կրոն. երկերի, պիեսների:

ԿՈՒԱՏՈՒԿ (Arctium), **կոճոճ**, աստղածաղկազգիների (բարդածաղկավորներ) ընտանիքի երկամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 10 (11) տեսակ, ՀՀ–ում՝ 4 (մեծ, փոքր, թաղիքավոր և անդրկովկաս.)՝ Վայոց ձորի, Սյունիքի, Լոռու, Տավուշի և այլ մարզերում, Երևանի շրջակայքում: Մատղաշ արմատներն ու ընձյուղներն ուտելի են:

ԿՈՋԵՆԻ ԲԱԲԲԱՒ, հայ–ի ներբայավոր խմբի «ս» ճյուղի բարբառ: Խոսվել է Ադրբեջանի Թովուզի շրջանում: Բաղաձայն. համակարգը գրաբարյան է:

ԿՈՋԻՆԵՐ, **կակտուսներ** (Cactaceae), երկշաքիլ, բազմամյա բույսերի ընտանիք: Սովորաբար մսալի, հյութալի և փշերով ու մազմզուկներով ծածկված ցողուններով են: Կան ծառանման, թփանման և լիանանման ձևեր:

ԿՈՒԼԱՎ, Ալեքսանդր Պետրովիչ (1904–1981), ռուս երկրաբան, նավթարդյունահանման բնագավառի մասնագետ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1968, թղթ. անդամ՝ 1953–ից): Աշխ–ները վերաբերում են նավթահանքերի շահագործման նոր համակարգերի մշակման և այլ հարցերի: ԽՍՀՄ Պետ. (1949), Լենինյան (1962) մրց–ներ:

ԿՈՒԼԱՎ, Ալեքսեյ Նիկոլաևիչ (1863–1945), ռուս նավաշինարար, մեխանիկոս, մաթեմատիկոս: Ծով. նախ–յան հատուկ հանձնարարությունների գեն. (1911), ծովակալության գեն–լեյտ. (1916): Ս. Պետերբուրգի (1916), ԽՍՀՄ (1925) ԳԱ–ների ակադ.: Աշխ–ները վերաբերում են նավաշին–յան տեսությանը, մագնիս. և հոլակ. կողմնացույցներին, հրետանուն, մեխանիկային, մաթ–ին և գիտ–յան պատմությանը: Մի շարք գործիքներ է ստեղծել նավերի և հրետանու համար: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941):

ԿՈՒԼԱՎ, Իվան Անդրեևիչ (1769–1844), ռուս գրող, առակագիր: Ռուսաստանի (1811), Ս. Պետերբուրգի (1841) ԳԱ–ների անդամ: Գրել է շուրջ 200 առակ («Գայլն ու գառը», «Շպուռն ու մրջյունը», «Ագռավն ու աղվեսը», 1809–43, ևն), որոնք աչքի են ընկնում երգիծ. սրությամբ, դիպուկ խոսքով: Հեղինակ է նաև պիեսների, օպեր. լիբրետոների: Հրապարակել է «Պոչտա դուխով» (ռուս., 1789) և այլ երգիծ. ամսագրեր: Հայ. է հրատարակվել «Առակներ» (1969) ժող–ը:

ԿՈՒԼԱՎ, Նիկոլայ Իվանովիչ (1903–1972), խորհրդ. զորահրամ.: ԽՍՀՄ մարշալ (1962): ԽՄ կրկնակի հերոս (1945): ՀՄՊ–ի ժամանակ՝ շտաբի պետ և մի շարք բանակների հրամ.: 1947–ից՝ մի շարք ռազմ. օկրուգների հրամ.:1963–ից՝ հատուկ նշանակության հրթիռ. զորքերի գլխ. հրամ., ԽՍՀՄ պաշտպ–յան փոխնախարար:

ԿՈՒԼԵ (Krle) Ռիստո (1900–1975), մակեդոն գրող: Մակեդոն. ազգ. դրամատուրգիայի հիմնադիրներից: Հեղինակ է «Փողը սպանում է» (1938), «Միլիոնավոր նահատակներ», «Անտիցան» (երկուսն էլ՝ 1940) և այլ սոցիալ–հոգեբ. դրամաների:

ԿՈՒԼԵԺԱ (Krleža) Միրոսլավ (1893–1981), խորվաթ գրող: Հեղինակ է «Պարոնայք Գլեմբաներ», «Հոգեվարք» (երկուսն էլ՝ 1928) սոցիալ–հոգեբ. պիեսների, «Ֆիլիպ Լատինովիչի վերադարձը» (1932), «Բանականության սահմանագծին» (1938), «Բանկետ Բլիտվեում» (գիրք 1–3, 1938–39, 1962) վեպերի, «Դրոշներ» (գիրք 1–5, 1963–68) վեպ–դյուցազներգության:

ԿՈՒՆԶԱԿԱՊԻԿՆԵՐ, կառչնապոչ կապիկների ցեղ: Մարմնի երկ. 70 *սմ*, պոչը՝ մարմնից երկար: Լավ զարգացած կոկորդապարկի շնորհիվ բարձր կռնչոցներ են արձակում (այստեղից՝ անվանումը): Հայտնի է 6 տեսակ՝ Կենտր. և Հվ. Ամերիկայի անձրևաառատ և լեռն. անտառներում: 2 տեսակ գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ԿՈՒՆԶԱՆ ԲԱԴ (Anas platyrhynchos), բադերի ընտանիքի թռչուն: Նստակյաց է: Մարմնի երկ՝ 50–60, թևերի բացվածքը՝ 81–98 *սմ*, կ. զ՝ 0,8–2 *կգ*: Բադերից ամենատարածվածն է, հաճախ՝ ընտանեցված: Մնվում է ջր. բույսերով, անողնաշարներով, ձկներով, երկկենցաղներով: ՀՀ–ում Կ. բ–երի թվաքանակը խիստ տատանվում է: Միգրող., մարզ. և որսի թռչուն է:

«ԿՈՒՎԱԽՆԶՈՐ», արտահայտությունը կապված է հուն. դից–յան երկպառակության աստվածուհի Էրիսի մասին առասպելի հետ: Մահկանացու Պելևսի և Թետիս աստվածուհու հարսանիքին չհրավիրված Էրիսը ոսկե խնձոր է նետել հարսանքատրահ՝ «ամենագեղեցիկին» մակագրությամբ: Խնձորին արժանանալու համար վեճ է ծագել Հերա, Աթենաս և Աֆրոդիտե աստվածուհիների միջև, որոնցից յուրաքանչյուրն իրեն համարում էր ամենագեղեցիկը: Վեճը լուծել է Պարիսը՝ խնձորը հանձնելով Աֆրոդիտեին, որից, ըստ ավանդության, ծագել է Տրոյական պատերազմը: Փխր. իմաստով՝ վեճի առարկա:

ԿՈՎԱԿԱՏՅԱՐ (Phylomachus pugnax), քարադրանմանների կարգի մորակոտցարների ընտանիքի թռչուն: Երկ.՝ մոտ 25 *սմ*: Գարնանն արուները «հարսանեկան» զգեստ են «հագնում» («ականջները» և «օձիքը» ծածկվում են երկար փետուրնեբով): Ապրում է Եվրասիայի տունդրայում և անտառ. գոտում: Ձմեռում է Աֆրիկայում և Հվ. Ասիայում:

ԿՈՒՈՒՄ, ճնշմամբ մետաղի մշակման եղանակ, որի դեպքում գործիքի բազմակի ընդհատուն հարվածների ազդեցությամբ պատրաստուկը (հիմնականում՝ տաքացրած) ձեռք է բերում անհրաժեշտ ձև ու չափեր: Լինում է մեք. և ձեռքի:

«ԿՈՒՈՒՆԿ», ուշ միջնադարի անհայտ հայ հեղինակի ստեղծած երգ: Բանաստեղծ. տեքստը պահպանվել է XVII դ–ի ***Տաղարաններում***, թարգմանվել և տպագրվել է բազմաթիվ լեզուներով: Մշակվել է ձայնի ու դաշնամուրի (առաջիններից է Ն. Ս. Կլենովսկու մշակումը) և այլ կատարումների համար: Առավել տարածված է ***Կոմիտասի*** մշակումը:

«ԿՈՒՈՒՆԿ», ազգ., հաս–քաղ., գր–գեղ. պարբ. (1919–70, Ֆիլադելֆիա, ապա՝ Նյու Յորք, կրկին՝ Ֆիլադելֆիա): «Կռունկ» ընկ–յան հրտ–յուն: Խմբ–տնօրեն՝ Գառնիկ ***Գևորգյան***:

«ԿՈՒՈՒՆԿ», հաս–քաղ. կազմ–յուն Լ.Դ–ում (1988–ի մարտ–հուլիս): ՀՀ ***«Ղարաբաղ» կոմիտեի*** հետ կազմակերպել է արցախահայության ազատագր. պայքարը: 1988–ի մարտի 24–ից անցել է ընդհատակ: Հուլիսի 29–ին տրոհվել է 2՝ Տնօրենների խորհուրդ և «Միացում» կազմ–յունների:

«ԿՈՒՈՒՆԿ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ», գր., բանասիր., բարոյախոս., վիճակագր. և տեղեկատու հանդես (1860–63, Թիֆլիս): Կովկասի հայ. 1–ին ամսագիրը: Հրտ–տնօրենն՝ Համբարձում ***Էնֆիաճյան***, խմբ.՝ Մարկոս ***Աղաբեկյան***:

ԿՈՒՈՒՆԿԱՆՄԱՆՆԵՐ, ***բարձրապոռնիներ***, թռչունների կարգ: Ոտքերը և պարանոցը երկար են: Հայտնի են 13 ընտանիք [կռունկներ, ագամներ (փողհարներ), ջրահովվիկներ, արոսներ, ավդոտկաներ ևնվ, մոտ 210 տեսակ:

ԿՈՒՈՒՆԿՆԵՐ (Gruidae), կռունկանմանների կարգի թռչունների ընտանիք: Բարձր.՝ 90–155 *սմ*: Թռիչքի ժամանակ պարանոցը և ոտքերը ձգում են արագիլի նման: Հայտնի է 15 տեսակ: Թվաքանակը կրճատվում է: 7 տեսակ, այդ թվում՝ սպիտակ (ստերխ), ճապոն. և սև Կ. գրանցված են ԲՊՄՄ Կարմիր գրքում: Դասության և գեղանի Կ. պահպանվում են: Ստեղծվել է Կ–ի պահպանության միջազգ. հիմնադրամ (ԱՄՆ): ՀՀ–ում հանդիպում է 2 տեսակ՝ մոխրագույն և գեղանի Կ.:

Հայոց մատենագրության մեջ կռունկը համարվում է հույսի ու հավատի, հայրենիքի ու հայրենաբաղձության խորհրդանիշ: Բազմաթիվ երգեր են նվիրվել Կ–ին:

ԿՎԱ ԼԵԶՈՒՆԵՐ, **սուդանական լեզուներ**, նիգեր–կոնգոլեզյան լեզվաընտանիքի ենթաընտանիք: Ներառում է արևմտաատլանտ., մանդե, կրու, գուր (մոսի), կվա, սոնգաի, յորուբա լեզվախմբերը, որոնք տարածված են Գվինեայի ծովեզերքում՝ Լիբերիայից մինչև Կամերուն:

ԿՎԱԿՎԱ (Nicticorax nicticorax), տառեղնեբի ընտանիքի թռչուն: Նստակյաց է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 58–65, թևերի

բացվածքը՝ 105–112 *սմ*, կ. զ.՝ 500–695 *գ*: Կտուցը կարճ է ու հաստ: Ապրում է ձկնաբուծ. լճակներում, ճահիճներում ևն: Մնվում է մանր ձկներով: Չափից ավելի բազմանալու դեպքում կարող է մնաս հասցնել ձկնաբուծ. տնտեսություններին:

ԿՎԱՆԶԱ (Kwanza), գետ Անգոլայում: Սկիզբ է առնում Շելլի լ–լանջերից և թափվում Ատլանտ. օվկ.: Երկ.՝ 960 *կմ*, ավազանը՝ 147,7 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 950 *մ*^{3}/*վ*:

ԿՎԱՆԳՈՒ, ք. Կորեայի Հանրապետության նահանգ, Սեուլի արբանյակներից: Բն.՝ 235 հզ. (2008): 370–746–ին՝ Պեկչե հնագույն թագավորության մայրաքաղաքը:

ԿՎԱՇԱ Իգոր Վլադիմիրովիչ (1933–2012), ռուս դերասան, ռեժ.: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1978): «Երիտասարդ դերասանների ստուդիա»–ի հիմնադիրներից (1956, 1965–ից՝ «Սովրեմեննիկ» թատրոն): Դերերից են՝ Առաջին նախարարը (Ե. Լ. Շվարցի «Մերկ թագավորը»), Պատմողը («Բալալայկինը և K^o»՝ ըստ Մ. Ե. Սալտիկով–Շչեդրինի), Ֆեոդոր («Կարամազով եղբայրներ»՝ ըստ Ֆ. Մ. Դոստոևսկու) ևն: Բեմադրել է Վ. Ն. Վոյնովիչի և Գ. Ի. Գորինի «Միջին փափկամազով տնային կատուն» (1989) ևն:

ԿՎԱՇՆԻՆ Անատոլի Վասիլևիչ (ծ. 1946), ռուս. բանակի գեն. (1997): ՌԴ հերոս (2000): 1992–94–ին՝ ՌԴ ԶՈՒ ԳԾ գլխ. օպերատիվ կառավարման պետի տեղակալ, ապա՝ 1–ին տեղակալ: 1994–95–ին՝ Չեչնիայի Հանրապետության դաշն. խմբավորման միացյալ զորքերի հրամ., Գրոզնիի գրոհի կազմակերպիչներից: 1995–97–ին՝ Հս–կովկաս. ԶՈՒ զորքերի հրամ., 1997–2004–ին՝ ՌԴ ԶՈՒ ԳԾ պետ, 2004–10–ին՝ ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչը Սիբիրի դաշն. օկրուգում:

ԿՎԱՊԻԼ (Kvapil) Յարոսլավ (1868–1950), չեխ գրող, լրագրող, դրամատուրգ, ռեժ.: Չեխոսլովակիայի ժող. արտիստ: 1900–18–ին՝ Ազգ. թատրոնի (Պրահա) ռեժ., 1921–28–ին՝ Վինոգրադիի Քաղաք. թատրոնի գեղ. ղեկ.: Հեղինակ է պիեսների («Աղջամուղջ», 1895, «Ամպեր», 1903, «Անդերսեն», 1914, ևն), օպերաների լիբրետոների, բեմադրել է Ֆ. Շիլլերի, Վ. Շեքսպիրի գործերից:

ԿՎԱՍ, զովացուցիչ ըմպելիք: Հայտնի էր դեռևս Հին Ռուսիայում: Պատրաստում են գարու և տարեկանի ածիկների խառնուրդից, տարեկանի չորահացից կամ ալյուրից, շաքարից ու ջրից՝ հետագա սպիրտային կամ կաթնաթթվային խմորմամբ:

ԿՎԱՄՆԵՎՍԿԻ (Kwasniewski) Ալեքսանդր (ծ. 1954), Լեհաստանի նախագահ՝ 1995–2005–ին: Լեհաստանի Հանրապետության ս–դ. կուս–յան հիմնադիրներից (1990): Կ–ու նախագահության տարիներին Լեհաստանն անդամակցել է ՆԱՏՕ–ին (1999) և ԵՄ–ին (2004):

ԿՎԱՏԵՌՆԻԿ (Kvaternik) Էուգեն (1825–1871), Խորվաթիայում Իրավունքի կուսյան հիմնադիրներից (1860–ական թթ–ի վերջ): Խորվաթ. հողերի միավորման և անկախ պետության ստեղծման ջատագով: 1871–ին հակահաբսբուրգ. ապստամբություն է բարձրացրել Ռազմ. սահմանի շրջանում, որտեղ էլ սպանվել է:

ԿՎԱՐԿԵՆ, 1. **Հարավային Կ.**, նեղուց Բալթիկ ծովում՝ Ալանդյան կղզիների և Սկանդ. թ–կղզու միջև: Բալթիկ ծոցը միացնում է Բալթիկ ծովին: Լայն.՝ մոտ 40 *կմ*, խոր.՝ մինչև 244 *մ*: 2. **Հյուսիսային Կ.**, միացնում է Բալթիկ ծոցի հս. և հվ. մասերը: Լայն.՝ 75 *կմ*, խոր.՝ մինչև 29 *մ*:

ԿՎԱՐՏԵՏ (լատ.՝ quartus – չորրորդ), **քառյակ**, 1. 4 երաժիշտ–կատարողներից (նվագողներ կամ երգիչներ) բաղկացած անսամբլ: 2. Երաժշտ. երկ՝ 4 գործիքի կամ ձայնի համար:

ԿՎԵԲՐԱԽՈ, **կեռրաչո**, աղտորազգիների ընտանիքի հվ–ամերիկ. ծառերի տեսակ: Կ. են կոչվում նաև կոշտ, ծանր փայտանյութը, կեղևը և դարաղող լուծամզուքը:

ԿՎԵԼԹԵԼԻ ԹԵՎԴՈՐԵ (ծ. թ. անհտ–1609), վրացի քին., թուրք. հարձակումների դեմ պայքարի հերոս: Հարկադրված հայտնել է Լուարսաբ II արքայի տեղը, սակայն թուրք. զորքին սխալ ճանապարհով է ուղղորդել, որի համար նրան սպանել են:

ԿՎԵՆԻ, **խեժափիճի**, սոճազգիների ընտանիքի տերևաթափ ասեղնատերևների ցեղի ծառեր: Հայտնի է 11 տեսակ՝ Հս. կիսագնդի լեռն. և անտառ. գոտիներում: Կազմավորում է մաքուր և խառնանտառներ: Փայտանյութն օգտագործում են նավաշինության մեջ: Օլգինյան և լեհ. Կ–ները (Կարպատների էնդեմիկ) պահպանվում են:

ԿՎԵՍԱ, ք. Պակիստանում, Բելուջիստանի վարչ. կենտրոնը: Բն.՝ 842,4 հզ. (2012): Կան սննդի, քիմ. արդ–յան և այլ ձեռն–ներ: Զարգացած է արհեստագործությունը:

ԿՎԻԼՈՒ (Kouilou, վերին հոսանքում՝ Նիարի), գետ Կոնգոյում: Երկ.՝ 700 *կմ*, ավազանը՝ 60 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը ստորին հոսանքում՝ 1200 *մ*^{3}/*վ*: Թափվում է Ատլանտ. օվկ.: Սահանքավոր է: Նավարկելի է ստորին հոսանքում (75 *կմ*):

ԿՎԻՆԻԽԻԶԵ Լեոնիդ Ալեքսանդրի (ծ. 1937), վրացի կինոռեժ.: ՌԴ արվ. վաստ. գործիչ (1993): Նկարահանել է «Առաջին այցելուն» (1966), «Ինժեներ Գարինի կործանումը» (1973, հեռուստաֆիլմ), «Կղզի» (1990) ևն: Հայտնի են նաև նրա երաժշտ. կինոկատակերգությունները («Ծղոտե գլխարկը», 1975, «Երկնային ծիծեռնակներ», 1976, Ցտեսություն, Մերի Փոփինս» (1983), «Սպիտակ գիշերներ» (1992, բոլորը՝ հեռուստաֆիլմ):

Թաթար. ԻԽՍՀ Պետ. (1968), «Ոսկե դիմակ» (2006) մրց–ներ:

ԿՎԻՆՏԵՏ (լատ.՝ quintus – հինգերորդ), 1. 5 երաժիշտ–կատարողներից (նվագողներ կամ երգիչներ) բաղկացած անսամբլ: 2. Երաժշտ. երկ՝ 5 գործիքի կամ ձայնի համար:

ԿՎԻՏԿԱ–ՕՄՆՈՎՅԱՆԵՆԿՈ (Կվիտկա) Գրիգորի Ֆեոդորովիչ (1778–1843), ուկրաինացի գրող: Գրել է նաև ռուս.: Հեղինակ է «Ազնվականական ընտրություններ» (1829), «Գավառակի գրագիր Շելմեննկոն» (1831), «Սպասյակ Շելմեննկոն» (1840) և այլ պիեսների, «Մալոռուսական պատմություններ…» (գիրք 1, 2, 1834, 1837) ժող–ի, «Պան Խալյավսկի» (1840), «Ստոլբիկովի որդի Պյոտր Ստեպանովի կյանքն ու արկածները» (1841) և այլ վեպերի:

ԿՎՅԱՏՈՎՍԿԻ Ալեքսանդր Պավլովիչ (1888–1968), ռուս տաղաչափագետ, թարգմանիչ: 1930–ական թթ–ին բռնադատվել է: 1920–ական թթ–ից մշակել է բանաստեղծության «ռիթմատաղաչափության» տեսությունը, շրջանառել շեշտային բանաստեղծությանը վերաբերող «չափական» հասկացությունը: Հեղինակ է «Բանաստեղծական տերմինների բառարան»–ի (1940), «Բանաստեղծական բառարան»–ի (1966):

ԿՏԱՎ, **քաթան, պաստառ**, 1. նեղ (40–60 *սմ*), համեմատաբար՝ կոպիտ, տնայնագործ. գործվածք: Պատրաստվում է վուշի մանվածքաթելերի քաթանե գործվածքից: 2. Մանվածք. արդ–յան կիսաֆաբրիկատ: 3. (Արվ.) գործվածք, որի վրա ստեղծվում է յուղաներկով (սակավ՝ սոսնձաներկով, տեմպերայով) գեղանկարչ. աշխ.:

ԿՏԱՎԱԽՈՏ (Linaria), **կտավատախոտ, վուշախոտ**, խլածաղկազգիների ընտանիքի միամյա կամ բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 150 տեսակ, ՀՀ–ում՝ 13 (սովոր., հայկ. ևն): Որոշ տեսակներ դեղաբույսեր են: Մեղրատու է և գեղազարդիչ: Մոլախոտ է:

ԿՏԱՎԱՏ (Linum), **վուշ**, կտավատազգիների (վուշազգիներ) ընտանիքի միամյա և բազմամյա խոտաբույսերի, հազվադեպ՝ կիսաթփերի ցեղ: Թելատու և ձիթատու բույս է: Հայտնի է 250 տեսակ՝ մերձարևադարձ. և բարեխառն գոտիներում, ՀՀ–ում՝ 12 (13) տեսակ (ավստրիական, երկծաղիկ, նրբատերև ևն): Մշակվում է Շիրակի և Սյունիքի մարզերում: Բարսեղյանի (հանդիպում է միայն Արարատի մարզի աղի ճահճուտներում), անատոլ. (Վայոց ձորի մարզում) և դեղնավուն (Վայոց ձորի և Սյունիքի մարզերում) Կ–ները գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

ԿՏԱՎԱՏԻ ՁԵԹ, բուս. յուղ: Ստացվում է ***կտավատի*** սերմերից: Օգտագործում են ներկաձեթ (օլիֆ), յուղ. լաքեր, բժշկ. քսուքներ պատրաստելու համար, ինչպես նաև սննդի մեջ:

ԿՏԵՍԻԱՍ ԿՆԻԴԱՑԻ (Ctesias the Cnidian, մ. թ. ա. V դ–ի վերջ–IV դ–ի սկիզբ), հույն պատմիչ, բժիշկ: Եղել է Պարսից Արտաքսերքսես II արքայի բժիշկը: «Պերսիկա» («Գիրք Պարսկականք») աշխ–յան հեղինակն է:

ԿՏՂՈՒՅ, **էստրուս**, կաթնասունների էգերի սեռ. ակտիվության շրջան, որի ժամանակ սեռ. օրգաններում զարգանում են ձվաբջիջները, և օրգանիզմը նախապատրաստվում է բեղմնավորման: Թոչունների վարքն ամուսնական (զուգավորման) շրջանի սկզբում անվանում են կտղուցում, կտղուցականչ:

ԿՏՏԿԵՆԻ (Sambucus), **թանթրվենի, շամբուկ**, այծատերևազգիների ընտանիքի տերևաթափ թփերի կամ ցածրաճ ծառերի, հազվադեպ՝ բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 40 տեսակ, ՀՀ–ում՝ 3 (խոտային, սև և Տիգրանի)՝ Արագածոտնի, Տավուշի, Սյունիքի մարզերի խոնավ և ստվերոտ վայրերում: Դեղաբույս է, բույսի բոլոր մասերն ունեն քրտնաբեր և միզամուղ հատկություններ: Մեղրատու է: Տիգրանի Կ. Հայաստանի բնաշխարհիկ է, գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ԿՏՐԻՃՎՈՐԱՑ ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, երիտասարդ. կիսառազմականացված աշխարհիկ և հոգևոր դաստիարակությանը նպաստող կազմ–յուններ Հայաստանում և հայկ. գաղութներում XII–XIX դդ–ում: Հիմնական նպատակը հայ երիտասարդությանը միավորելն էր:

ԿՏՐԻՉ (լատ.՝ Caelum), Հվ. կիսագնդի հմասաստեղություն: Կ–ում չկան 4–րդ աստղ. մեծությունից ավելի վառ աստղեր: Հայաստանի տարածքից երևում է:

ԿՏՐՎԱԾՔ ԳԵՏԻ, կայուն բազիսի պայմաններում գետի հունի երկայն. կտրվածքը (հոսքի ուղղությանն ուղղահայաց

ուղղությամբ): «Կ. գ.» հասկացությունը պայմանական է և ունի հիմնականում տես. նշանակություն:

ԿՏՅԱԳԼՈՒԽՆԵՐ, սողունների կարգ: Ժամանակակից ներկայացուցիչը ***հատերիան*** է:

ԿՏՅԱՂՈՒՆՉՆԵՐ, ատամնավոր կետերի ենթակարգի ծով. կաթնասունների ընտանիք: Երկ.՝ 5–12,5 *մ*: Դունչը ներքաշված է կտուցի մեջ: Հայտնի է 5 սեռ.՝ շշաքիթներ, կտցադունչներ, փոկատամներ, թասմանյան կետեր ևն: 20 տեսակ Կ. տարածված են լայնորեն:

ԿՏՅԱՐ–ԿԱՉԱՂԱԿ (Haematonus ostralegus), կտցար–կաչաղակների ընտանիքի թռչուն: Մարմնի երկ.՝ 40–45, թևերի բացվածքը՝ 86–88 *սմ*, կ. զ.՝ 500 *գ*: Կտուցը հաստ ու երկար է: Մնվում է փափկամարմիններով, որոնց որսում է տիղմը քրքրելով: ՀՀ-ում գրանցվել է միայն գարնան. չուի ընթացքում:

ԿՏՅԱՐՆԵՐ, քարադրանմանների ընտանիքի թռչունների ենթակարգ: Երկ.՝ 14–62 *սմ*: Հայտնի է 2 ընտանիք՝ գունավոր մորակտցարներ և քարադրներ: Բազմաթիվ Կ. որսի թռչուն են:

ԿՏՈՒՑ, թռչունների օրգան՝ երկար անատամ ծնոտներով: Կ–ով բռնում է որսը, երբեմն՝ մասնատում, փորում (օր.՝ փայտփորիկի Կ.), քջջում, փետուրները մաքրում, բույն շինում ևն:

ԿՏՈՒՑ, Չլատան, կղզի Վանա լճի արլ–ում՝ ափից 1 *կմ* հեռ–յամբ: Լճի տեղատվության ժամանակ Կ. դառնում է թ–կղզի: Տարածքը՝ 4 *կմ*², երկ.՝ 3 *կմ*, առլգն լայն.՝ 2 *կմ*: Կ–ում է Վասպուրականի ուշ միջնադարի վան. համալիրներից ***Կտուց անապատը***: Կիսականգուն է Սբ Հովհաննես–Կարապետ եկեղեցին (1712–20):

ԿՏՈՒՑ ԱՆԱՊԱՏ, ճարտ. համալիր: Հիմնադրել է ***Գրիգոր Ա Լուսավորիչը*** Վանա լճի ***Կտուց*** կղզում: Բաղկացած է 7 եկեղեցուց: Հիշատակվում է XI դ–ում: 1462–ին վերանորոգվել են Սբ Հովհաննես Կարապետ և Սբ Խաչ եկեղեցիները: XV–XVIII դդ–ում անապատը եղել է գրչության կենտրոն (տես ***Կտուց անապատի գրչության կենտրոն***): 1712–ին հիմնովին վերակառուցվել է Սբ Կարապետ եկեղեցին (ճարտ.՝ Խոշխաբար Բաղիշեցի), 1740–ին կառուցվել է քառամույթ գավիթը, որից մուտք է բացվել դեպի Սբ Հրեշտակապետաց մատուռը: Ամայացել է Մեծ եղեռնի ժամանակ:

ԿՏՈՒՑ ԱՆԱՊԱՏԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, XV–XVII դդ–ի հայ մշակույթի կենտրոն ***Կտուց*** կղզում: Կ. ա. գ. կ–ում են գործել Հովսեփ և Ծերուն (XV դ–ի սկիզբ), Խաչատուր, Հովհաննես, Մինաս և Բարսեղ (1460–80–ական թթ.) գրիչները: Մնդ–ում են պահվում կենտրոնում ընդօրինակված Հայսմավուրք (1462, ձեռ. № 4883), Ավետարան (1463, ձեռ. № 6365) և այլ ձեռագրեր:

ԿՐԱԳ (Krag) Ենս Օտտո (1914–1978), Դանիայի վարչապետ՝ 1962–68 և 1971–72–ին: 1958–62–ին՝ ԱԳ նախարար: 1962–74–ին՝ Դանիայի սոց–դեմոկրատ. կուս–յան նախագահ: Դանիայի պատմության մեջ ամենահայտնի քաղաքագետներից է:

ԿՐԱԳՈՒՅԵՎԱՑ (Kraguevac), ք. Սերբիայում, Շումադիա շրջանի վարչ. կենտրոնը: Բն.՝ 179 հզ. (2011): Տնտ. և գիտ. կենտրոն է:

ԿՐԱՆԵՎՄԿԻ Ալեքսանդր Անտոնովիչ (1932–1999), ռուս. մոլ. կենսաբան: ՌԳԱ ակադ. (1994): Հետազոտել է ԴՆԹ–ի կենսասինթեզի շարժընթացները մարդու և կենդանիների բջիջներում: Աշխ–ները վերաբերում են մարդու իմունային անբավարարության վիրուսի ֆերմենտները ճնշող միացությունների նախագծմանը:

ՌԴ Պետ. մրց. (2000):

ԿՐԱՆԵՎՄԿԻ Անդրեյ Ալեքսանդրովիչ (1810–1889), ռուս հրտ., հրապարակախոս: 1836–37–ին օգնել է Ա. Ս. Պուշկինին՝ խմբագրելու ***«Սովրեմեննիկ»*** հանդեսը, 1840, 1844–48–ին՝ ***«Լիտերատուրնայա գազետա»***–ի խմբ., ***«Օտեչեստվեննիե զապիսկի»*** (1839–68) ամսագրի, «Գոլոս» (ռուս., 1863–83) թերթի հրտ.: Ռուս. հեռագր. գործակալության (1866–ից) հիմնադիրներից:

ԿՐԱՋԻՇՆԻԿ (Krajisnik) Մոմչիլո (ծ. 1945): 1990–91–ին՝ Հարավսլավիայի Հանրապետությունների Դաշն. Միության (ՀՀԴՄ) Բոսնիա–Հերցեգովինայի (Բ–Հ) սկուպշչինայի (խորհրդարան), 1991–95–ին՝ Սերբիայի Հանրապետության ժող. սկուպշչինայի,1996–98–ին՝ Սերբիայի Հանրապետության նախագահ: 2006–ին Հաագայի միջազգ. դատարանը Կ–ին մեղադրել է 1992–95–ին Բ–Հ–ի տարածքում թուրքերի էթնիկ. զտում կազմակերպելու համար և դատապարտել 27 տարվա բանտարկության: Կ. մեղադրանքը չի ընդունել: Բանտարկությունից ազատվել է 2013–ին:

ԿՐԱԿ, մարդկային մշակույթի կարևորագույն հայտնագործություն. առաջին հետքերը հայտնաբերվել են մարդու հնագույն կացարաններում (Չժոուկոուդյան, Վերտեշտյոլյոշ)՝ 500 հզ. տարի առաջ: Սկզբում օգտվել են բնական Կ–ից: Ուշ պալեոլիթում Կ. ստացել են փայտի երկու կտորների շփման, իսկ երկաթի դարից սկսած՝ կայծքարի օգնությամբ: XIX դ–ում հայտնագործվել է ֆոսֆորե լուցկին: Կ–ին տիրապետելը նախնադար. մարդու մեծագույն հայտնագործություններից է: Այն էապես փոխել է մարդու կենցաղը. նրանով տաքացել են, կերակուր պատրաստել, կավե ամանեղեն թրծել, հետագայում Կ. օգտագործել են հանքանյութերը հալելու և մշակելու համար: Կ. ***այրման*** քիմ. ռեակցիայի արտաքին դրսևորումն է, ուղեկցվում է բոցով և ծխով:

ԿՐԱԿԱԴԻՄԱՅԿՈՒՆ ՆՅՈՒԹԵՐ, նիկելի, երկաթի, կոբալտի հիմքով համաձուլվածքներ, դժվարահալ մետաղներ և դրանց հիմքով համաձուլվածքներ, նաև կրակադիմացկունությամբ օժտված որոշ բաղադրանյութեր: Կիրառվում են շոգե– և գազատուրբինների թիեր, գերձայն. թռչող ապարատների արտաքին դետալներ և այդ ապարատների երեսպատվածքներ պատրաստելու և այլ նպատակներով:

ԿՐԱԿԱՄ, հանգած կրի՝ $Ca(OH)_2$–ի կախույթը ջրում: Տես ***Կալցիումի հիդրօքսիդ***:

ԿՐԱԿԱՀԵՑՍՏԻԹՅՈՒՆ, մետաղների և համաձուլվածքների՝ բարձր ջերմաստիճաններին, առանց հալվելու, դիմակայելու հատկություն:

ԿՐԱԿԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, կրակի՝ իբրև «գերբնական» տարերքի երկրպագություն, աստվածացում: Ծագել է հնագույն ժամանակներում՝ կրակի, երկնք. շանթի, հրաբուխների, հրդեհների հանդեպ՝նախնադար. մարդու երկյուղի, նրա կյանքում կրակի ունեցած վիթխարի նշանակության, ինչպես նաև կրակի ստացման և պահպանման դժվարությունների ազդեցությամբ: Կ. սերտորեն խարսխվել է արևի պաշտամունքին: ***Արևապաշտությունը*** անհիշելի ժամանակներից տարածված է եղել նաև Հայաստանում (հեթանոս հայերի Արեգակի աստվածը ***Միհրն*** էր), որի տարրերը հասել են նաև մեր օրերը (***Տյառնընդառաջին*** խարույկի շուրջը պտտվելը, կրակի վրայով թռչելը ևն): Հուն. դից–յան մեջ կրակի հովանի աստվածը Հեփեստոսն էր, հռոմեականում՝ Վեստան: Կ. հատուկ նշանակություն է ունեցել ***զրադաշտականության*** մեջ:

«ԿՐԱԿԻ ՏԱՐԻ», Նախճավանի և Խրամի կոտորածի տարվա՝ 705–ի փխր. անվանումը: Արաբ նվաճողները 705–ին խաբեությամբ հավաքել և Նախճավանի ու Խրամի եկեղեցիներում այրել են հարյուրավոր հայ իշխանների, մի մասին էլ կոտորել:

ԿՐԱԿՈՎ (Krakow), **Կրակով**, ք. Լեհաստանում, համանուն վոյեվոդության վարչ. կենտրոնը: Բն.՝ 761 հզ. (2015): Երկրի տնտ., մշակութ. կենտրոններից է, երկթղ. հանգույց, գետ. նվինգստ: Հիմնադրվել է VIII–X դդ–ում: XI–XVI դդ–ում եղել է լեհ. պետության մայրաքաղաքը և առևտր. ու արհեստավոր. խոշոր կենտրոն: Հայտնի են Վավելի դղյակը (Սբ Մարիամի ռոտոնդան՝ X դ. գոթ. տաճարը, թագավոր. պալատը՝ XIII–XVII դդ.), Հին քաղաքում՝ ամրոցի մնացորդները, առևտր. շարքեր, գոթ. կաստյոլ, համալսարանի շենքը (XV դ.) ևն: Քաղաքի պատմ. մասը ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ–ի մշակութ. ժառանգության ցանկում: Հայերի մասին տես ***Լեհաստան*** հոդվածում:

ԿՐԱԿՈՎԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ, հիմնադրվել է 1792–ին (Լեհաստան): Հետազոտում են աստղերի լուսաչափությունը, խավարուն–փոփոխ. աստղերը, Արեգակնային համակարգի մարմինների շարժումները:

ԿՐԱԿՈՎԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Յագելոնյան **համալսարան**, Եվրոպայի հնագույն համալսարաններից (Լեհաստան): Հիմնադրվել է 1364–ին ***Կազիմիր III***–ի նախաձեռնությամբ: 2015–ին ուներ շուրջ 50 հզ. ուսանող:

ԿՐԱՄԱՏՈՐՍԿ, ք. (1932–ից) Ուկրաինայում: Բն.՝ 169,2 հզ. (2010): Սև մետաղագործության կենտրոն է, կա շինանյութերի արդ–յուն:

ԿՐԱՄԱՐԺ (Kramář) Կարել (1860–1937), Չեխոսլովակիայի վարչապետ՝ 1918–19–ին: 1890–1918–ին՝ երիտչեխերի, 1919–ից՝ Ազգ–ժող. կուս–ների առաջնորդ: 1935–ից՝ Ազգ. միասնության կուս–յան (գոյատևել է մինչև 1938–ի վերջ) ղեկ.:

ԿՐԱՄԱՐՈՎ, Սավելի Վիկտորովիչ (1937–1995), ռուս կինոդերասան: ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1974): Ստեղծել է սուր բնութագր. կերպարներ («33», «Վարպետների քաղաքը», «Անորսալի վրիժառուներ», «Հաջողության ջենտլմեններ», «Աֆոնիա» ևն): 1980–ական թթ–ի սկզբից աշխատել է ԱՄՆ–ում: Կյանքի վերջին տարիներին նկարահանվել է Ռուսաստանում («Նադյա», «Ռուսական բիզնես» ևն):

ԿՐԱՄԵՐ (Cramer) Գաբրիել (1704–1752), շվեյցարացի մաթեմատիկոս: Աշխ–ները վերաբերում են հանրահաշվ. հավասարումներին (Կ–ի կանոն) և երկրչփ–յանը:

ԿՐԱՄԵՐ (Cramér) Հարալդ (1893–1985), շվեդ մաթեմատիկոս: Հիմնարար արդյունքներ է ստացել թվերի, հավանականությունների տեսությունների, մաթ.

վիճակագրության (օգտագործում են Կ–ի ձևափոխությունները, պայմանները, անհավասարությունները, Էջվորդ–Կ–ի վերլուծությունը կենտր. սահման. թեորեմում), ապահովագրության մաթ. տեսության ոլորտներում:

ԿՐԱՄԵՐ Վասիլի Վասիլևիչ (Վիլհելմ Վիլհելմովիչ, 1876–1935), ռուս. նյարդախտաբան, նյարդավիրաբուժության հիմնադիրներից Ռուսաստանում: Աշխ–ները վերաբերում են գլխուղեղում ֆունկցիաների տեղադրությանը, գլխուղեղի ախտահարման ախտանշանագիտ–յանը: Վ. Ի. *Լենինին* բուժող բժիշկն էր:

ԿՐԱՄՆԻԿ Վլադիմիր Բորիսովիչ (ծ. 1975), ռուս. շախմատիստ: Միջազգ. գրոսմայստեր (1991): ՌԴ ս. վ. վ.: Աշխարհի 14–րդ չեմպիոնը (2000–14): Ռուսաստանի թիմի կազմում Համաշխ. օլիմպիադայի (1992, 1994, 1996), թիմ. առաջնության Եվրոպայի (1992) և աշխարհի (2013) հաղթող, աշխարհի գավաթակիր (2013), արագ շախմատի առաջին «Ինտել–գրան պրի» (1994), Բիլբաոյի «Մեծ սաղավարտի» (2010) հաղթող:

Շախմատի «Օսկար» (2005, 2006):

ԿՐԱՄՍԿՈՅ Իվան Նիկոլաևիչ (1837–1887), ռուս գեղանկարիչ, պերեդվիժնիկ: Սոցիալ. և հոգեբ. խորությամբ է ստեղծել ռուս. մշակույթի գործիչների («Լ. Տոլստոյ», 1873, «Նեկրասով», 1877–78, «Մ. Ե. Սալտիկով–Շչեդրին», 1879, ևն) և գյուղացիների («Անտառապահ», 1874, ևն) դիմանկարներ: Թեմատիկ. կտավներում անդրադարձել է փիլ–բարոյական խնդիրների («Քրիստոսը անապատում», 1872, ևն), բացահայտել բարդ հոգեվիճակներ («Անսփոփ վիշտը», 1884, ևն): Կ–ի «Քրիստոսի գլուխը» (1880–ական թթ.) և «Ծովակալ Ս. Ա. Գրեյգի դիմանկարը» (1883) գործերը ՀԱՊ–ում են:

ԿՐԱՅԻՆ ՍՊՈՒՆԳՆԵՐ, սպունգների տիպի ծով. անողնաշարների դաս: Կմախքը բաղկացած է կրային ասեղներից: Ոչ մեծ (բարձր.՝ մինչև 7 *սմ*), միայնակ կամ գաղութային կենդանիներ են: Հայտնի է ավելի քան 100 տեսակ՝ առավելապես ծանծաղուտներում, բարեխառն լայն–ներում:

ԿՐԱՅՆԵՎ Վլադիմիր Վսեվոլոդովիչ (1944–2011), ռուս. դաշնակահար: ԽՍՀՄ ժող. արտիստ (1990): Տ. Ա. *Տարասովայի* ամուսինը: 1966–ից՝ Մոսկվայի ֆիլհարմոնիայի մենակատար:

Պ. Ի. Չայկովսկու անվ. միջազգ. մրցույթի 1–ին (1970, Մոսկվա), ԽՍՀՄ (1986), ՌԴ (2002) Պետ. մրց–ներ:

ԿՐԱՅՈՎԱ (Craiova), ք. Ռումինիայում, Դոլժ ժուդեցի վարչ. կենտրոնը: Բն.՝ 269 հզ. (2011): Զարգացած է գղտ., էլեկտրատեխ., մեքենաշին., պոլիգրաֆ. և սննդի արդ–յունը:

ԿՐԱՅՍԿԻ (Kreisky) Բրունո (1911–1990), Ավստրիայի կանցլեր՝ 1970–83–ին: 1967–1983–ին՝ Ավստրիայի սոց. կուս–յան (ԱՍԿ) նախագահ: 1953–59–ին՝ Ավստրիայի ԱԳՆ պետ. քարտուղար, 1959–66–ին՝ նախարար: 1983–ից՝ ԱՍԿ պատվ. նախագահ:

ԿՐԱՅՏՆԵՐ, **բունգարներ**, ասպիդների ընտանիքի թունավոր օձերի սեռ: Երկ.՝ մինչև 2 *մ*: Թունավոր ատամները մեծ չեն, թույնն ունի նյարդալուծնք. ազդեցություն: Հայտնի է 12 տեսակ՝ տարածված Հվ. և Հվ–արլ. Ասիայում:

ԿՐԱՆԱԽ (Cranach) Լուկաս Ավագ (1472–1553), գերմանացի գեղանկարիչ, գրաֆիկ: Վաղ շրջանի գործերը («Յ. Կուսպինիան», 1502–03, «Հանգիստ եգիպտոսի ճանապարհին», 1504, ևն) աչքի են ընկնում ռեալիստ. կերպարների թարմությամբ: Ուշ շրջանի ստեղծագործություններում նկատելի է Վերածննդի դարաշրջանի գեղ. սկզբունքների, գոթական ոճի ավանդույթների տարրերի և մաներայնության հատկանիշների զարգացումը («Երիտասարդության աղբյուրը», 1546, ևն):

ԿՐԱՇԵՎՍԿԻ (Kraszewski) Յուզեֆ Իգնացի (1812–1887), լեհ գրող: Հեղինակ է «Ույանա» (1843), «Օստապ Բոնդարչուկ» (1847), «Խառնածինները» (1869), «Կոմսուհի Կոզելը» (1874), «Բրյուլ» (հ. 1–2, 1875), «Յոթնամյա պատերազմից» (հ. 1–4, 1875) վեպերի, պատմ. վիպաշարի (29 երկ, 1876–87), «Օրորոցից մինչև գերեզման» (1885) հուշագրության:

ԿՐԱՉԿՈՎՍԿԻ Իգնատի Յուլիանովիչ (1883–1951), ռուս. արևելագետ: Ռուս. արաբագիտ–յան հիմնադիրներից: Ռուսաստանի ԳԱ ակադ. (1921): Հեղինակ է միջին դարերի և նոր ժամանակի արաբ. գրկ–յանը, լեզվին, պատմությանը, մշակույթին վերաբերող աշխ–ների: «Իսլամի հանրագիտարանի» 1–ին հեղինակներից:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ԿՐԱՊԻՎԱ Կոնդրաշ Ատրախովիչ (Կոնդրատ Կոնդրատևիչ, 1896–1991), բելառուս գրող: ԲԽՍՀ ժող. գրող (1956), Բելառուսիայի գիտ. վաստ. գործիչ (1978), ԳԱ ակադ. (1950), փոխնախագահ (1956–82): Հեղինակ է առակների, ֆելիետոնների, պատմվածքների. լեզվաբ. աշխ–ների, «Ով վերջինն է ծիծաղում» (1939), «Երգում են արտույտները» (1950), «Անմահության դարպասներ» (1973) և այլ կատակերգությունների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1951, 1971):

ԿՐԱՊԻՎԻՆԱ Գալինա Նիկոլաևնա (ծ. 1950), բալետի ռուս արտիստուհի: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1990): 1968–ից՝ Մոսկվայի Կ. Ս. Ստանիսլավսկու և Վ. Ի. Նեմիրովիչ–Դանչենկոյի անվ. երաժշտ. թատրոնի մենապարուհի (Օդետա–Օդիլիա՝ Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճը», Կիտրի՝ Լ. Ֆ. Մինկուսի «Դոն Կիխոտ», Մեղորա՝ Ա. Ադանի «Կորսար», ևն), 1993–ից՝ մանկավարժ–փորձավար:

ԿՐԱՋՈՒՐ, *կալցիումի հիդրօքսիդի* հագեցած ջր. լուծույթը: Տեխնիկայում օգտագործվում է որպես էժան ալկալի: Միջնադար. հայկ. ձեռագրերում Կ. կոչվել է նաև «սուր ջուր» և կիրառվել է համաձուլվածքները մաքրելու համար:

ԿՐԱՍԱՍԻՈՒԿԱՍ (Krasauskas) Ստասիս (1929–1977), լիտվացի գրաֆիկ: Լիտվ. ԽՍՀ ժող. նկարիչ (1977): Հաստոց. փոքրագրանկարներին և նկարազարդումներին (Է. Մեժելայտիսի գործերի, 1961–62, «Հավերժ ողջերը», գրաֆիկ. շարք, 1973–1975) բնորոշ են փոխաբեր. պատկերավոր կառուցվածքը, սև ֆոնի վրա արտահայտիչ սպիտակ գծերը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1976):

ԿՐԱՍԻԼՆԻԿՈՎ Գենադի Դմիտրևիչ (1928–1975), ուդմուրտ գրող: Հեղինակ է «Մնում եմ քեզ հետ» (1960) վիպակի, գյուղ. երիտասարդների կյանքը պատկերող «Օլեքսան Կարիշև» (1962–64), «Տաբեմուտ» (1965) վեպերի, «Կանաչ ուլունքներ» (1975) պատմվածքների ժող–ի:

ԿՐԱՍԻԼՆԻԿՈՎ Նիկոլայ Ալեքսանդրովիչ (1896–1973), ռուս մանրէաբան: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1946): Աշխ–ները վերաբերում են միկրոօրգանիզմների (հիմնականում՝ ակտինոմիցետների) էկոլոգիային և կարգաբանությանը, ախտածին բակտերիաներից հողի պաշտպ–յանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1951, 1972):

ԿՐԱՍԻԿՈՎ Պյոտր Անանևիչ (1870–1939), ռուս պետ. գործիչ: 1917–ից՝ Պետրոգրադի խորհրդի Ռազմահեղ. կոմիտեի հակահեղ–յան և չարաշահումների դեմ պայքարի քննչ. հանձնաժողովի անդամ, 1918–ից՝ Վճռաբեկ դատարանի նախագահ, ՌԽՖՍՀ արդարադատության փոխնախարար, 1924–ից՝ ԽՍՀՄ գերագույն դատարանի դատախազ, 1933–ից՝ նախագահ:

ԿՐԱՄԻՆ Անդրեյ Կապիտոնովիչ (1911–1981), բելոռուս ֆիզիկոս: ԲԽՍՀ ԳԱ ակադ. (1960): Աշխարհում առաջին ԱԷԿ–ի (Օբնինսկ) և Բելոյարսկի ԱԷԿ–ի ստեղծողներից: Լենինյան մրց. (1957):

ԿՐԱՍԻՆՍԿԻ (Krasiński) Զիգմունտ (1812–1859), լեհ գրող: Գրել է նաև ֆրանս.: Հեղինակ է «Ոչ աստվածային կատակերգություն» (1835), «Իրիդիոն» (1836) ռոմանտիկ. փիլ–պատմ. դրամաների, կրոն. թեմաներով «Լուսաբացից առաջ» (1843) պոեմ–«մտապատկերների», «Ապագայի սաղմոսներ» (1845) բանաստեղծությունների շարքի:

ԿՐԱՍԻՑԿԻ (Krasicki) Իգնացի (1735–1801), լեհ գրող: Լեհ. Վերածննդի խոշոր ներկայացուցիչ: Հեղինակ է երգիծ. բանաստեղծությունների, օդաների, հիմների, ուղերձների, առակների, լեհ. առաջին՝ «Միկոլա Դոսվյաղչինսկու արկածները...» (1776) վեպի, բարոյախոս–ուսուցող. «Պան Պոդստոլի...» (գիրք 1–3, 1778–1803), «Պատմություն՝ բաժանված երկու գրքի» (1794) վեպերի, «Բանաստեղծական արվեստի և բանաստեղծների մասին» (հրտ.՝ 1803) աշխ–յան: Կազմել է «Պիտանի տեղեկությունների ժողովածու» (հ. 1–2, 1871) հանրագիտարանը:

ԿՐԱՄՆԻԿՈՎ Գենադի Յակովլևիչ (ծ. 1958), նանո– և միկրոէլեկտրոնիկայի բնագավառի ռուս գիտնական: ՌԴԱ ակադ. (2008, թղթ. անդամ՝ 1997–ից): Աշխ–ները վերաբերում են SS–ներին, ենթամիկրոն. չափերի ինտեգրալ սխեմաների մշակմանն ու ստեղծմանը և դրանց պատրաստման որակի ապահովմանը: ՌԴ Կառ–յան (1999, 2009), Պետ. (2014) մրց–ներ:

ԿՐԱՄՆՈԲԱԵՎ Տիմոֆեյ Պետրովիչ (1865–1952), ռուս վիրաբույժ, մանկական վիրաբուժության հիմնադիրներից Ռուսաստանում: ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1945): Հիմնադրել է ոսկրահոդային տուբերկուլոզի դպրոց: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949):

ԿՐԱՄՆՈԳՈՐՍԿ, ք. (1940–ից) Մոսկվայի մարզում: Բն.՝ 100,9 հզ. (2009): Այստեղ է ՌԴ կինոլուսանկարչ. պետ. արխիվը, գերմանացի հակաֆաշիստների թանգարանը, մերձակայքում՝ «Արխանգելսկոյե» (XVIII–XIX դդ.) կալվածք–թանգարանը:

ԿՐԱՄՆՈԳՈՐՍԿԻ Նիկոլայ Իվանովիչ (1882–1961), ռուս. ֆիզիոլոգ: ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1945): Ի. Պ. *Պավլովի* աշակերտը: Աշխ–ները վերաբերում են երեխաների բարձրագույն նյարդ. գործունեության ֆիզիոլոգիային: ԽՍՀՄ Պետ. մրց. (1952):

ԿՐԱՄՆՈԴԱՐ (մինչև 1920–ը՝ Եկատերինոդար), ք. ՌԴ–ում, Կ–ի երկրամասի վարչ. կենտրոնը: Բն.՝ 853 հզ. (2016): Կան մեքենաշին., նավթավերամշակման, քիմ., թեթև, սննդի արդ–յան և այլ ձեռն–ներ, ունի դեղերի և ճենապակու արտադր–յան գործարաններ, հնէաբան. ինստ., թանգարան: Հիմնադրվել է 1793–ին՝ որպես ռազմ. քաղաք:

Կ–ում հաստատված առաջին հայ առևտրականների մասին տեղեկությունները հիշատակվել է 1797–ից: 1802–ին կառուցվել է հայկ. մատուռ, 1834–ին այն վերակառուցվել է՝ որպես Սբ Աստվածածին քարաշեն եկեղեցի: Հայերը եկել են Նոր Նախիջևանից, Չերքեզիայից և Արմավիրից, իսկ XIX դ–ի 2–րդ կեսից՝ նաև Թուրքիայի սևծով. շրջաններից: Ներկայում Կ–ում բնակվում է շուրջ 27 հզ. հայ (2010): Գործում են Մեսրոպ Մաշտոցի անվ. հայկ. մշակութ. ընկ–ը, կիրակնօրյա հայկ. 3 դպրոց: Լույս է տեսել *«Մաշտոց»* (1993–2003) թերթը, 1996–ից հրատարակվում է *«Երկրամաս»* ամսաթերթը: Կ. ՀԱԵ Հվ. Ռուսաստանի թեմի կենտրոնն է: 1997–ին օծվել է Սբ Հովհաննես Ավետարանիչ առաջնորդանիստ եկեղեցին:

ԿՐԱՄՆՈԴԱՐԻ ԵՐԿՐԱՄԱՍ, ՌԴ Հվ. դաշն. օկրուգի կազմում: Տարածքը՝ 75,4 հզ. *կմ*^{2}, բն.՝ 5,5 մլն (2015): Վարչ. կենտրոնը՝ *Կրասնոդար:* Ազգ. կազմը՝ ռուսներ (88,3%), հայեր (5,3 %), ուկրաինացիներ (1,6 %), հույներ, բելառուսներ են: Կազմավորվել է 1937–ին: Ունի 38 շրջան, 26 քաղաք, 12 քտա: Գլխ. գետը *Կուբանն* է, տարածքում են *Կրասնոդարի ջրամբարը*, Կովկաս. արգելոցը, Սոչիի ազգ. պարկը:

Կ. և–ում հայերը հիմնավորվել են XV–XVI դդ–ում: Ներկայում բնակվում է շուրջ 281 հզ. հայ (2010, այլ տվյալներով՝ շուրջ 800 հզ.): Երկրամասում գործում են ամենօրյա և կիրակնօրյա հայկ. դպրոցներ, Համշենահայ մշակութ. միությունը, Նովոռոսիյսկում՝ «Լույս» հայկ. մշակութ. միությունը, Սոչիում՝ «Սևան» քաղաք. մշակութ. կենտրոնը, Կրասնոդարում՝ Մեսրոպ Մաշտոցի անվ. հայկ. մշակույթի ընկ–ը, Անապայում՝ «Ցանք» հայկ. ազգ. մշակույթի կենտրոնը: 1992–ի վերջից հրատարակվում են թերթեր: Կրասնոդարում ստեղծվել է երկրամասի հայկ. համայնքները համակարգող խորհուրդ:

ԿՐԱՄՆՈԴԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ, Կրասնոդարում (Եկատերինոդար) հայկ. ներկայացումներ խաղացել են 1882–ից (ղեկ.՝ Տ. Գալֆայան): Տեղի թատեր. խմբի հետ հանդես են եկել Մ. Սարդարյանը, Պ. Ադամյանը, Ջաբելը, Ա. Վրույրը, նաև Բաքվի հայ դերասանախումբը, Աբելյան–Արմենյան, Աբելյան–Սիրանույշ և այլ թատերախմբեր: 1919–ին Վ. Վաղարշյանը Կրասնոդարում հիմնադրել է «Կոմունա» հայ դերասանների աշխ. խումբը: Թատերախմբում էին Վ. Վաղարշյանը, Հ. Բաղդասարյանը, Մ. Սանուկյանը, Ա. Արաբյանը և ուր.: Բեմադրվել են Շիրվանզադեի «Պատվի համար», Լ. Շանթի «Հին աստվածներ», Վ. Շեքսպիրի «Օթելլո» և այլ գործեր: Թատրոնը որոշ ժամանակ եղել է նաև դրամա–օպերետ. (Տիգրանյանի «Անուշ», Երիցյանի «Ուշ լինի, նուշ լինի», ևն):

ԿՐԱՄՆՈՅԱՐՍԿ, ք. ՌԴ–ում, Կրասնոյարսկի երկրամասի վարչ. կենտրոնը, նվինգստ՝ Ենիսեյի ափին: Բն.՝ 947,8 հզ. (2009): Կան մեքենաշին., մետաղաձուլ., քիմ., թղթի–թաղանթանյութի, թեթև, սննդի արդ–յան և այլ ձեռն–ներ: Հիմնադրվել է 1628–ին: Գործում են ՌԳԱ ՍԲ գիտկենտրոնը՝ բուհեր (6 համալսարան), թատրոններ, երկրագիտ. թանգարան, Վ. Ի. Սուրիկով կալվածք–թանգարանը, եկեղեցիներ: Կ–ի մերձակայքում է Կրասնոյարսկի ջրէկը:

ԿՐԱՄՆՈՅԱՐՍԿԻ ԵՐԿՐԱՄԱՍ, ՌԴ Սիբիրի դաշն. օկրուգի կազմում: Տարածքը՝ 2,37 մլն *կմ*^{2}, բն.՝ 2,9 մլն (2009): Վարչ. կենտրոնը՝ *Կրասնոյարսկ*: Կազմավորվել է 1934–ին, 2007–ին միավորվել է Թայմիրի և Էվենկ. ԻՕ–ների հետ: Ունի 48 շրջան, 23 քաղաք, 40 քտա: Ազգ. կազմը՝ ռուսներ (91,3 %), ուկրաինացիներ (1,4 %), թաթարներ (1,3 %) ևն: Գլխ. գետը Ենիսեյն է, տարածքի մեծ մասը ծածկված է տայգայով, գործում է «Լեռնասյուներ» ազգ. պարկը:

ԿՐԱՄՆՈՇՉՈԿՈՎ Յուրի Իվանովիչ (1927–2011), ռուս ճարտարագետ, պլազմայի քիմիկոս: ՌԳԱ ակադ. (1991, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1984–ից): ՌԴ գիտ–յան և տեխ. վաստ. գործիչ (1996): Աշխ–ները վերաբերում են կառուցվածք. նոր նյութերի ստացմանը: ԽՍՀՄ Պետ. (1981), Լենինյան (1990) մրց–ներ:

ԿՐԱՄՆՈՊՈԼՍԿԻ (Կրասնոպոլսկի–Լեդով) Վլադիմիր Արկադևիչ (ծ. 1933), ռուս. կինոռեժ.: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1983): Նկարահանել է (բոլորը՝ Վ. Ի. Ուսկովի հետ) «Դատապարտման ենթակա չէ» (1969), «Ստվերներն անհետանում են կեսօրին» (1972, հեռուստասերիալ), «Հավերժական կանչ» (1976–83, հեռուստասերիալ), «Գիշերային զվարճալիքներ» (1991), «Գողը» (1995), «Ծուղակ» (2007), «Վոլֆ Մեսսինգ: Ժամանակի միջով տեսնողը» (2009, երկուսն էլ՝ հեռուստասերիալ) և այլ ֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1979):

ԿՐԱՄՆՈՎ, Անդրեյ Նիկոլաևիչ (1862–1914/15), ռուս բուսաբան, հողագետ, աշխարհագետ: Բաթումի բուսաբ. այգու հիմնադիրը (1912): Աշխ–ները վերաբերում են Միջին Ասիայի, Հս. կիսագնդի տափաստանների բուսականության հարցերին:

ԿՐԱՄՆՈՎ Միխայիլ Միխայլովիչ (1929–2006), ռուս ակնաբան: ՌԲԳԱ ակադ. (1975): Սոց. աշխ. հերոս (1979): Աշխ–ները վերաբերում են աչքի միկրովիրաբուժությանը (այդ թվում՝ լազեր. և անդրաձայն.): ԽՍՀՄ Պետ. (1975) և Լենինյան (1978) մրց–ներ:

ԿՐԱՄՆՈՎ Պյոտր Նիկոլաևիչ (1869–1947), ռուս զորահրամ., գեն–լեյտ. (1917), գրող: 1917–ի հոկտ–ին (Ա. Ֆ. *Կերենսկու* հետ) ղեկավարել է հակաբոլշևիկ. զինված ապստամբությունը: 1918–ին և 1919–ի սկզբին՝ Դոնի զորքերի ատաման և Սպիտակկազակ. բանակի հրամ: 1920–ից՝ վտարանդի: Հեղինակ է «Երկգլխանի արծվից կարմիր դրոշ, 1894–1921» (1921–22) վեպի, Ռուսաստանի ապագայի մասին «Տատասկափշից այն կողմ» (1922) ուտոպ. վեպի («Largo», «Սխրանք», երկուսն էլ՝ 1930, «Հերկը», 1931) եռերգության, նաև մանկապատանեկան արկած., ինքնակենսագր. երկերի, հրապարակախոս. գործերի: ՀՄՊ–ի ժամանակ համագործակցել է գերմ. հրամանատարության հետ: Խորհրդ. դատարանը դատապարտել է մահապատժի:

ԿՐԱՄՆՈՎ–ԱՍԼԻ Վասիլի Իվանովիչ (1900–1978), չուվաշ գրող: Հեղինակ է Հոկտ. հեղ–յան և Քաղաքաց. պատերազմի իրադարձությունները պատկերող «Կրակների մեջ» (հ. 1–3, 1957–61), չուվաշ. գյուղի կոլեկտիվացման տարիների մասին «Սարն ի վեր» (գիրք 1, 2, 1929, 1964), «Անշեջ արև» (1965) վեպերի, վիպակների:

ԿՐԱՄՆՈՎՍԿԻ Ալեքսանդր Աբրամովիչ (1913–1993), ռուս. կենսաքիմիկոս և կենսաֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (1991, ԽՍՀՄ ԳԱ ակադ. 1976–ից): Բացահայտել է քլորոֆիլի հետադարձ լուսաքիմ. վերականգնման ռեակցիան (Կ–ի ռեակցիա): ԽՍՀՄ Պետ. մրց. (1991):

ԿՐԱՍՈՍ ՄԱՐԿՈՍ ԼԻԿԻՆԻՈՍ (Crassus, մ. թ. ա. մոտ 115–53), հռոմեացի զորահրամ.: *Triumvirի* կողմնակիցներից էր: Մ. թ. ա. 71–ին ճնշել է *Սպարտակի* ապստամբությունը, 60–ին՝ առաջին եռապետության անդամ:

ԿՐԱՍՈՎՍԿԻ Ալեքսանդր Արկադևիչ (1921–2003), ռուս. կիբեռնետիկ: ՌԳԱ ակադ. (1992): Ավիացիայի գեն–մայոր (1963): Սոց. աշխ. հերոս (1981): Աշխ–ները վերաբերում են ինքնաշխատ կարգավորման, կառավարման համակարգերի տեսությանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1976):

ԿՐԱՍՈՎՍԿԻ Անտոն Յակովլևիչ (1821–1898), ռուս. մանկաբարձ–գինեկոլոգ, գիտ. դպրոցի հիմնադիր: Ռուսաստանում առաջինն է կատարել ձվարանի հեռացման վիրահատություն (1862):

ԿՐԱՍՈՎՍԿԻ Նիկոլայ Նիկոլաևիչ (1924–2011), ռուս. մեխանիկոս: ՌԳԱ ակադ. (1991, ԽՍՀՄ ԳԱ ակադ.՝ 1968–ից): Սոց. աշխ. հերոս (1974): Աշխ–ները վերաբերում են կառավարվող համակարգերի շարժման կայունության տեսությանը և դիֆամիկային: Լենինյան (1976), ԽՍՀՄ Պետ. (1984) մրց–ներ:

ԿՐԱՍՈՎՍԿԻ Ֆեոդոսի Նիկոլաևիչ (1878–1948), ռուս. աստղագետ–գեոդեզիստ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1939): Կ–ի ղեկավարությամբ որոշվել են Երկրի էլիպսոիդի չափերը (*Կրասովսկու էլիպսոիդ*): ԽՍՀՄ Պետ. մրց. (1943, 1952՝ հետմահու):

ԿՐԱՍՈՎՍԿՈՒ ԷԼԻՊՍՈԻԴ, երկր. էլիպսոիդ, որի չափերը [մեծ կիսառանցքը (հասարակածի շառավիղը)՝ 6 378245 *մ*, բևեռ. սեղմվածությունը՝ 1 : 298,3] որոշվել են 1940–ին՝ Ֆ. Ն. *Կրասովսկու* ղեկավարությամբ:

ԿՐԱՎԿՈՎ Նիկոլայ Պավլովիչ (1865–1924), ռուս դեղաբան, դեղաբանության հիմնադիրներից Ռուսաստանում, գիտ. դպրոցի հիմնադիր: Ռուսաստանի ԳԱ թղթ. անդամ (1920): Աշխ–ները վերաբերում են դեղանյութերի ազդեցության կախվածությանը դեղաչափից և կոնցենտրացիայից: Լենինյան մրց. (1926, հետմահու):

ԿՐԱՎՉԵՆԿՈ Անդրեյ Գրիգորևիչ (1899–1963), ուկրաինացի զորահրամ., տանկ. զորքերի գեն–գնդ. (1944): ԽՄ հերոս (1944, 1945): ՀՄՊ–ի ժամանակ՝ տանկ. բրիգադի, կորպուսի, 1944–ից՝ տանկ. բանակի հրամ.:

ԿՐԱՎՉԵՆԿՈ Գրիգորի Պանտելեևիչ (1912–1943), ռուս. օդաչու: ԽՄ կրկնակի հերոս (1939): ՌՕՈՒ գեն–լեյտ. (1940): Մասնակցել է Խորհրդա–ֆինն. պատերազմին, ճապոն. զավթիչների դեմ՝ Խալխին Գոլի շրջանում (Չինաստան) մարտերին: ՀՄՊ–ի ժամանակ եղել է ՌՕՈՒ բանակի և դիվիզիայի հրամ.: Զոհվել է օդ. մարտում:

ԿՐԱՎՉՈՒԿ Լեոնիդ Մակարովիչ (ծ. 1934), ուկրաինացի քաղ. գործիչ: Ուկրաինայի նախագահ՝ 1991–94–ին: 1989–ից Ուկրաինայի կոմկուսի ԿԿ քարտուղար, 1990–ի հունիս–սեպտ–ին՝ 2–րդ քարտուղար: 1990–91–ին Ուկրաինայի ԳԽՈ նախագահ: Բ. Ն. Ելցինի և Ս. Ս. Շուշկևիչի հետ 1991–ին ստորագրել է *Բելովեժյան համաձայնագիրը*:

ԿՐԱՏ Վլադիմիր Ալեքսեևիչ (1911–1983), ռուս. աստղագետ: *Օդապարիկային աստ–*

դագիպտության հիմնադիրներից: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1972): Աշխ-ները վերաբերում են Արեգակի ֆիզիկային, կրկնակի աստղերին, կոսմոգոնիային ևն: Ղեկավարել է խորհրդ. 1-ին վերնոլորտ. աստղադիտարանի հիմնադրման աշխ-ները:

...ԿՐԱՏԻԱ (հուն.՝ kratos – ուժ, իշխանություն), բարդ բառերի մաս: Նշանակում է իշխանություն, կառավարում (օր.՝ ***դեմոկրատիա, թեոկրատիա***):

ԿՐԱՏԻԼՈՍ (մ. թ. ա. V դ–ի 2–րդ կես–IV դ–ի սկիզբ), նախասոկրատեական շրջանի հույն փիլ., Հերակլիտեսի հետևորդը, սոփեստ Պրոտոգորասի աշակերտը, Պլատոնի ուսուցիչը: Կ. զարգացրել է Հերակլիտեսի՝ իրերի համընդհ. «հոսունության» մասին ուսմունքը:

ԿՐԱՈՒԶԵ (Krause) Թոմ (1934–2013), ֆինն երգիչ (բաս–բարիտոն): 1975–ից՝ Փարիզի «Գրանդ օպերա», Միլանի «Լա Սկալա», Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերա» թատրոնների մենակատար (Ռիգոլետտո՝ Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», Էսկամիլիո՝ Ժ. Բիզեի «Կարմեն», ևն):

ԿՐԱՈՒՆ–ԼԱԹԵՐՆԵՐ, մակրոտարացիկլիկ միացություններ, որոնք շղթայում պարունակում են 11 ատոմից ավելի, որոնցից 4–ը հետերոատոմներ են (O, N, S) և կապված են էթիլեն. կամրջակներով: Կայուն կոմպլեքսներ են առաջացնում մետաղների (հիմնականում՝ ալկալիական և հողալկալիական) իոնների հետ: Կիրառվում են լուծույթներից մետաղների կոնցենտրացման և բաժանման, իոն–ընտրողական թաղանթների ստեղծման համար:

ԿՐԱՔԱՐ, հիմնականում կալցիտից՝ $CaCO_3$–ից (հազվադեպ՝ արագոնիտից) կազմված նստվածք. ապար: Առավել հաճախ հանդիպող խառնուրդներն են դոլոմիտը, քվարցը, կավ. միներալները, երկաթի և մանգանի օքսիդներն ու հիդրօքսիդները:

ԿՐԵԱ (Kréa) Անրի (ծ. 1933), ալժիրցի ֆրանսիագիր գրող: Հեղինակ է «Կարևոր օր» (1956), «Հեղափոխությունը և պոեզիան...» (1957) բանաստեղծությունների ժող–ների, «Երկրաշարժ» (1958) դրամայի, «Ջամալ» (1961) վեպի, «Գլխապտույտ պոեմներ» (1967), «Յուգուրտի գերեզմանը» (1968) պատմ. վիպակի:

ԿՐԵԱՏԻՆ, N–մեթիլ–գուանիդինքացախաթթու, ազոտ պարունակող օրգ. թթու: Մտնում է մկանների և գլխուղեղի բջիջներում պարունակվող ֆոսֆոկրեատինի՝ պահուստ. էներգետիկ. նյութի բաղադրության մեջ:

ԿՐԵԱՑԻՈՆԻԶՄ (լատ.՝ creation – արարում), **արարչականություն,** 1. կրոն. և փիլ. ուսմունք աշխարհի և մարդու աստված. արարչագործության մասին: Բնորոշ է թեիստ. կրոններին՝ հուդայականությանը, քրիստոնեությանը և մահմեդականությանը: 2. (Կենսբ.) տեսակների հաստատունության հայեցակարգ, որն օրգ. աշխարհի բազմազանությունը դիտարկում է որպես Աստծու արարչագործության արդյունք:

ԿՐԵԲԻՅՈՆ (Crébillon) Կլոդ Պրոսպեր Ժոլիո (Կրեբիյոն–որդի, 1707–1777), ֆրանսիացի գրող: «Սրտի և մտքի մոլորություն» (1736–38) վեպը երիտասարդ մարդու «զգացմունքների դաստիարակման» պատմություն է: Հեղինակ է նաև ռոկոկոյի ոճով զգայականության թեման զարգացնող «Սոֆա» (1742) և այլ վեպերի:

ԿՐԵԲՍ (Krebs) Հանս Ադոլֆ (1900–1981), գերմանացի կենսաքիմիկոս: 1933–ից՝ Մեծ Բրիտանիայում: Լոնդոնի թագավոր. ընկ–յան (1947) և ԱՄՆ ազգ. ակադ–ի (1964) անդամ: Նկարագրել է աերոբ օքսիդացման հիմն. ռեակցիան՝ եռկարբոնաթթվային ցիկլը (Կրեբսի ցիկլ) և միզանյութի սինթեզի օրնիտինային ցիկլը կենդանիների երիկամներում: Նոբելյան մրց. (1953):

ԿՐԵԶՈԼՆԵՐ, մեթիլհիդրօքսիբենզոլներ, մեթիլֆենոլներ, $CH_3C_6H_4OH$, օրգ. միացություններ: ***Օրթո–, մետա–, պարա***–Կ. բնորոշ անդուր հոտով հեղուկներ են, $t_{եռ.}$, համապատասխանաբար՝ 191, 202,8, 201,9°C: Պարունակվում են քարածխ. խեժում: Կիրառվում են ներկանյութերի, բժշկ. պատրաստուկների, հոտավետ նյութերի, հակաօքսիդանտների արտադրյան մեջ: Օգտագործում են ախտահանման համար:

ԿՐԵԼ (Crelle) Ավգուստ Լեոպոլդ (1780–1855), գերմանացի մաթեմատիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1834): 1826-ին հիմնադրել է «Տեսական և կիրառական մաթեմատիկայի ամսագիրը» (Կ–ի ամսագիր). հրապարակվում է ցայսօր:

ԿՐԵԼԻՑ (Kraelitz) Ֆրիդրիխ (1876–1932), ավստրիացի լեզվաբան, արևելագետ: Հայ–ին վերաբերող աշխ–ներում անդրադարձել է թուրք–ում հայ–ից փոխառյալ բառերին, հայատառ թուրք–ին, Գրիգոր Տաթևացու «Ընդդեմ մահմեդականաց» աշխ–յան մեջ արաբ., պարսկ. և թուրք. փոխառություններին ևն: Հեղինակ է նաև գերմանախոսների համար հայ–ի քերակ–յան:

ԿՐԵԿԻՆԳ (անգլ.՝ cracking, < crack – ճեղքել), **ջերմաճեղքում**, նավթի և նավթանյութերի երկրորդային վերամշակումը ծանր ածխաջրածինների ճեղքմամբ (տրոհմամբ), գլխավորապես շարժիչների վառելանյութ և քիմ. հումք ստանալու համար: Տարբերում են ջերմ. Կ. [կատարվում է բարձր ջերմաստիճանում (450–550°C) և ճնշման (4–6 *ՄՊա*) տակ] և կատալիտիկ Կ. [կատարվում է բարձր ջերմաստիճանում (450–500°C), ցածր ճնշման տակ (0,4 *ՄՊա*)՝ կատալիզորդի (այլումասիլիկատներ) առկայությամբ]:

ԿՐԵՄԱԶԻ (Crémazie) Օկտավ Ժոզեֆ (1827–1879), կանադացի ֆրանսիագիր բանաստեղծ: Ֆրանսիալեզու կանադ. պոեզիայի հիմնադիրը: 1861–ից՝ «Կանադական երեկոներ» (ֆրանս.) գր. հանդեսի հրտ.: Հեղինակ է հայրենասիր. բանաստեղծությունների, «Փարիզի պաշարման օրագիր» (հրտ.՝ 1882) հրապարակախոս. նյութերի ժող–ի:

ԿՐԵՄԵՆՉՈՒԿ, ք. Ուկրաինայում, նվինգստ Դնեպրի ափին: Բն.՝ 225 հզ. (2013): Երկթղ. հանգույց է:

ԿՐԵՄԵՐ Գիդոն Մարկուսովիչ (ծ. 1947), հրեա ջութակահար: Դ. Ֆ. ***Օյստրախի*** աշակերտը: Լոքենհաուսի (Ավստրիա) կամեր. երաժշտության միջազգ. փառատոնի հիմնադիրը (1981): 1974–ից՝ Մոսկվայի ֆիլհարմոնիայի մենակատար: Հյուրախաղերով հանդես է եկել Հայաստանում:

Եղիսաբեթ թագուհու անվ. (3–րդ մրց., 1967, Բրյուսել), Ն. Պագանինիի անվ. (1–ին մրց., 1969, Ջենովա), Պ. Ի. Չայկովսկու անվ. (1–ին մրց., 1970, Մոսկվա) միջազգ. մրցույթների դափնեկիր, «Գրեմմի» (2001), Ռ. Շոկի (2008) մրց–ներ:

ԿՐԵՄԵՐ (Krämer) Ինգրիդ (ծ. 1943), գերմանացի մարզուհի (ջրացատկ): Օլիմպ. խաղերի (1960, 1964՝ ցատկահարթակից, 1960՝ ցատկաշտարակից), Եվրոպայի (1962) չեմպիոն:

ԿՐԵՄԵՐ (Cremer) Ֆրից (1906–1993), գերմանացի քանդ.: ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի պատվ. անդամ (1967): Հեղինակ է ֆաշիզմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանների (Բուխենվալդ, 1952–58, Մաուտհաուզեն, 1949 և 1961–65), հուգեր. դիմաքանդակների («Բ. Բրեխտ», 1956–1957, ևն):

ԿՐԵՄԼ, հինռուս. քաղաքների կենտր. մասը՝ շրջափակված աշտարակավոր պարսպապատերով, պաշտպ., պալատ. և եկեղեց. շինությունների համալիր: Տեղադրվել է բարձր մասերում, սովորաբար՝ գետի կամ լճի ափին, եղել է քաղաքի միջուկը և որոշել նրա ուրվանկարն ու հատակագծումը: Պահպանվել են Պսկովում, Սմոլենսկում, Տուլայում, Մոսկվայում և այլուր:

ԿՐԵՄԼ ՄՈՍԿՎԱՅԻ, Մոսկվայի հնագույն և կենտր. մասը՝ Բորովիցկի բլրի վրա՝ Մոսկվա գետի ափին: Ընդգրկում է XV–XVII դդ–ի ռուս. ճարտ–յան առաջնակարգ հուշարձանները՝ Վերափոխման (Ուսպենսկի, 1475–79), Ավետման (Բլագովեշչենսկի, 1484–89), Սբ Հրեշտակապետաց (Արխանգելսկի, 505–508) տաճարները, «Իվան Մեծ» զանգակատունը (1505–08), Գրանիտե (1487–91), Տերեմնոյ (1635–36) պալատները, Զինանոցը (1702–1736), Սենատի շենքը (1776–87), Կրեմլի մեծ պալատը (1839–49), Զինապալատը (1844–52): Կ. Մ–ում են «Արքա–թնդանոթը» (XVI դ.) և «Արքա–զանգը» (XVIII դ.): 1991-ին ստեղծվել է «Մոսկովյան Կրեմլ» պատմամշակութ. թանգարան–արգելոցը: Կ. Մ–ում է ՌԴ նախագահի նստավայրը: Ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ–ի Համաշխ. մշակույթի ժառանգության ցանկում:

«ԿՐԵՄԼԻ ԳՈՐԾ», կեղծ մեղադրանք մի շարք գործիչների նկատմամբ 1930–ական թթ–ին՝ Ստալինի դեմ «մահափորձ» կազմակերպելու համար: Գործի շրջանակներում ձերբակալվել և դատապարտվել է 29 մարդ:

ԿՐԵՅՍԼԵՐ (Kreisler) Ֆրից (1875–1962), ավստրիացի ջութակահար, կոմպոզիտոր: Ջութակի մանրանվագների, վալսերի, փոխադրումների վարպետ:

ԿՐԵՅՑՖԵԼԴ–ՅԱԿՈԲԻ ՀԻՎԱՆԴԱԽՏ–ՅՈՒՆ, կորտիկո–ստրիոսպինալային դեգեներացիա, ԿՆՀ–ի կազմափոխ. հարաճուն հիվանդություն. բնորոշվում է գլխուղեղի կեղևի, ենթակեղև. հանգույցների և ողնուղեղի ախտահարմամբ: Հաճախ ի հայտ է գալիս 30–50 տարեկանում՝ հիշողության հարաճուն խանգարումով (ընդհուպ մինչև թուլամտություն), շարժումների համաձայնեցման խանգարումներով (ատաքսիա), միոկլոնիայով, զգայախաբություններով, խոսքի կորստով: Կոչվել է գերմանացի բժիշկներ Հ. Գ. Կրեյցֆելդի և Ա. Մ. Յակոբի անուններով, որոնք առաջինն են բացահայտել և նկարագրել հիվանդությունը:

ԿՐԵՅՑԵՐ (Kreutzer) Ռոդոլֆ (1766–1831), ֆրանսիացի (ծագումով՝ գերմանացի) ջութակահար, կոմպոզիտոր, դիրիժոր: Ջութակի XIX դ–ի ֆրանս. դպրոցի հիմնադիրներից: Նապոլեոն I–ի (1802–ից), Լյուդովիկոս XVIII–ի (1815–ից) պալատի կամեր. վիրտուոզը: Հեղինակ է «Ջութակի մեթոդ» (Պ. Բալոյի և Պ. Ռոդոյի հետ, հրտ.՝ 1802) գրքի, ջութակի կոնցերտների,

օպերաների, բալետների, կամեր-գործիք. անսամբլների ևն: Կ–ին է ձոնված Լ. վան Բեթհովենի ջութակի և դաշնամուրի սոնատը («Կրեյցերյան սոնատ»):

ԿՐԵՅՑՎԱԼԴ (Kreutzwald) Ֆրիդրիխ Ռեյնհոլդ (1803–1882), էստոնացի գրող, լուսավորիչ, բանահավաք: Էստ. գրկ–յան հիմնադիրը: Կազմել է *«Կալևիպոեգ»* (1857–61) ազգ. էպոսը: Հեղինակ է «Էստոնական ինագույն ժողովրդական հեքիաթներ» (1866) ժող–ի, երգիծ. պատմվածքների:

ԿՐԵՆՈԶՈՄՈՋ, մորթատու գազանների ինվազիոն հիվանդություն (նեմատոդների խմբի հելմինթոզ): Հարուցիչները կրենոզոմատիդների խմբի կլոր որդերն են: Մակաբուծում են բրոնխներում և շնչափողում: Ախտանշանները՝ հազ, հյուծում: Միջանկյալ տերերը փափկամարմիններն են:

ԿՐԵՈԼԻՆ, յուղանման մուգ դարչնագույն հեղուկ, էմուլգարարի, օր.՝ տեխ. օճառի և փայտի, տորֆի ևնի խեժերի հրաքայքայմամբ թորման ֆրակցիաների (եռման ջերմաստիճանը՝ 180–240°C) խառնուրդ: Ձր. էմուլսիաներն օգտագործում են ախտահանման և միջատազերծման համար:

ԿՐԵՈԼՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, **կրեոլներ**, պիջինների հիման վրա ձևավորված լեզուներ (մոտ 50), որոնք յուրացրել են երեխաները՝ որպես մայրենի լեզու.: Տարածված են հիմնականում Աֆրիկայում, Ասիայում, Ամերիկայում, Օվկիանիայում: Խոսողների թիվը որպես առաջին լեզու՝ 25–30 մլն է, որպես երկրորդ լեզու՝ 80–90 մլն (XXI դ–ի սկիզբ):

ԿՐԵՈԼՆԵՐ (ֆրանս.՝ creole, < իսպ. criollo բառից), գաղութատիր. շրջանում առաջացած էթնոռասայական հանրույթ: 1. Լատ. Ամերիկայի առաջին իսպանացի վերաբնակիչների սերունդները: 2. Բրազիլիայի և Լատ. Ամերիկայի նախկին անգլ., հոլ. և ֆրանս. գաղութների աֆրիկացի ստրուկների ժառանգները: 3. Սիեռա Լեոնեում և Լիբիայում ազատություն ստացած աֆրիկացի ստրուկների ժառանգները: 4. Աֆրիկ. երկրներում աֆրիկացիների և ոչ բնիկների խառնամուսնությունների ժառանգները: 5. XVIII–XIX դդ–ում Ալյասկայում ռուս վերաբնակիչների հետ ինդիկների, էսկիմոսների, ալեուտների խառնածին ժառանգները:

ԿՐԵՉՄԵՐ (Kretschmer) Էռնստ (1888–1964), գերմանացի հոգեբույժ և հոգեբան: Աշակել է խառնվածքի որոշակի տիպերի (շիզոթիմիկ, ցիկլոթիմիկ) հետ մարմնակազմվածքի հիմն. տիպերի (պիկնիկ, աթլետիկ, ասթենիկ) կապի մասին ուսմունք:

ԿՐԵՊ (ֆրանս.՝ crêpe), 1. հատուկ մշակված անհարթ մակերեսով մետաքսե կամ բրդե գործվածքների ընդհանուր անվանումը: Գործվածքի առանձնահատկությունն ապահովվում է թելի առավելագույն ոլորումով: Տարբերում են Կ–դեշին, Կ–ժորժետ, Կ–սատին, Կ–շիֆոն տարատեսակները: 2. Սև թափանցիկ գործվածք, նաև սգո թևկապ՝ այդ գործվածքից:

ԿՐԵՊԵԼԻՆ (Kraepelin) Էմիլ (1856–1926), գերմանացի հոգեբույժ, գիտ. դպրոցի հիմնադիր: Նոզոլոգ. սկզբունքների հիման վրա դասակարգել է ժամանակակից հոգեկան հիվանդությունները: Նկարագրել է մի շարք կլինիկ. ձևեր:

ԿՐԵՊՍ Եվգենի Միխայլովիչ (1899–1985), ռուս. ֆիզիոլոգ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1966): Սոց. աշխ. հերոս (1969): Հաստատել է մկաններում նյութափոխանակության կենսընթացների վրա սիմպաթիկ նյարդ. համակարգի ազդեցությունը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1985, հետմահու):

ԿՐԵՄԻԼԱՅՈՍ ԿԻԴՈՆԱՅԻ, մ. թ. ա. V դ–ի 2–րդ կեսի հույն քանդ.: Աշխատել է Աթենքում: Ստեղծել է Պերիկլեսի կիսանդրին, «Ամազոնուհի», «Դիոմեդես», «Աթենաս» արձանները:

ԿՐԵՈՍՈՍ (Kresos, մ. թ. ա. 595–546), Լիդիայի վերջին թագավորը՝ մ. թ. ա. 560–ից: Գրավել է Փոքր Ասիայի Եփեսոս, Միլետոս և հուն. այլ ք–ներ, նվաճել Փոքր Ասիայի արմ. մասը (մինչև Հալիս գետը): Պարտվել է Պարսից արքա Կյուրոս II–ին և գերվել: Ըստ հինարվ. արձանագրությունների՝ մահապատժի է ենթարկվել: Մովսես Խորենացին հայտնում է, որ Կ–ին հաղթել և գերել է Հայոց արքա Արտաշես Ա–ն, հրամայել է սպանել, ապա ներում է շնորհել:

ԿՐԵՍՄԻԴԱ, Ուրանի արբանյակ. հայտնաբերվել է «Վոյաջեր–2» տիեզ. ապարատով (ԱՄՆ, 1986): Հեռ. Ուրանից՝ մոտ 62 հզ. *կմ*, տրամագիծը՝ մոտ 60 *կմ*:

ԿՐԵՍՍՈՆ (Cresson) Էդիթ (ծ. 1934), ֆրանսիայի միակ կին վարչապետը՝ 1991–92–ին: 1988–89–ին՝ եվրոպ. գործերի նախարար (սոց. կուս–յունից):

ԿՐԵՍՏՈՎ ԳԵՆԱԴԻ Ալեքսեևիչ (1931–1994), ռուս քիմիկոս, ոչ ջր. լուծույթների քիմիայի գիտ. դպրոցի հիմնադիրը: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1981): ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1975): 1981–94–ին՝ ՌԳԱ ոչ ջր. լուծույթների քիմիայի ինստ–ի (այժմ՝ Կ–ի անվ.) տնօրեն: Աշխ–ները վերաբերում են ոչ ջր. լուծույթների քիմիային: ԽՍՀՄ Պետ. մրց. (1987):

ԿՐԵՍՏՈՎՄԿԻ Վսեվոլոդ Վլադիմիրովիչ (1839–1895), լեհ ռուսագիր գրող, գրաքննադատ: «Պետերբուրգյան հետնախորշեր» (1864–66) արկած. վեպում պատկերել է Ս. Պետերբուրգի պերճանքն ու ծայրամասաբնակ աղքատ մարդկանց կյանքը: Հեղինակ է նաև «Բանաստեղծություններ» (հ. 1–2, 1862) ժող–ի, «Երկու ուժեր» (1874) և այլ վեպերի, բացահայտ հակասեմիտ. «Ջհուդն է գալիս» («Եգիպտական խավար», 1888, «Թամար Բենդավիթ», 1889–90, «Վասալի ցնծությունը», անավարտ, 1891) եռերգության, նաև ակնարկների:

ԿՐԵՎՅԱՆ ՈՒՆԻԱ 1385 (Unia krewska, Krevos unija), Լեհ. թագավորության և *Լիտվական մեծ իշխանության* քաղ. միավորման համաձայնագիր: Կնքվել է Կրևյան դղյակում (այժմ՝ Բելառուսի Գրոդնոյի մարզում): Չնայած իրավաբ. ուժի պահպանմանը՝ լիտվացի մեծ իշխան *Վիտովտին* հաջողվել է մինչև կառավարման ավարտը վերացնել իր քաղ. կախվածությունը լեհ. թագավորից:

ԿՐԵՏԱԿԱՆ ԳԻՐ, գրի ինագույն տեսակ (մ. թ. ա. III–II հզ–ական)՝ հայտնաբերված Կրետե կղզում և Հունաստանում: Տարբերում են զարգացման 3 փուլ՝ հիերոգլիֆային և Ա ու Բ գծային գրեր: Դրված է կիպրոսյան գրի հիմքում:

ԿՐԵՏԱԿԵՐ (Pernis arivorus), ճուռակների ընտանիքի գիշատիչ թռչուն: Բնադրող չվող է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 43–53, թևերի բացվածքը՝ 100–121 *սմ*, կ. զ.՝ 700 *գ*: Սնվում է առավելապես մեղուների և կրետների թրթուրներով, մանր ողնաշարավորներով: Հարմարվել են կրետնեղի և մեղուների հարձակումներին:

ԿՐԵՏԵ (Crete), ինագույն պետություն Միջերկր. ծովի համանուն կղզում: Տարածքը՝ 8,3 հզ. *կմ*^{2}: Մարդու բնակության առաջին հետքերը վերաբերում են հին քարի դարին: Մ. թ. ա. III հզ–ամյակում առաջացել են վաղ ստրկատիր. պետություններ (Կնոսոս, Փեստոս ևն): Մ. թ. ա. XIV դ–ում Կ–ի մի մասը զավթել են աքայացիները: Մ. թ. ա. XII դ–ում Կ. են թափանցել դորիացիները: Կ–ի պոլիսներն ստեղծել են լավ մշակված օրենքների ժող.: Բրոնզի դարում եղել է *Էգեյան մշակույթի* կենտրոններից: 395–823 և 961–1204–ին՝ Բյուզանդիայի կազմում, 823–961–ին պատկանել է արաբներին: 1204–ին գրավել են խաչակիրներն ու վաճառել Վենետիկին: 1715–ից՝ Օսմ. կայսրության գերիշխանության կազմում: Կ–ի բնակչությունը մասնակցել է Հունաստանի 1821–29–ի հեղ–յանը, 1866–69 և 1896–97–ի Կրետեի ապստամբություններին: 1898–ին ստացել է վարչ. ինքնավարություն՝ «խոշոր տերությունների հովանու ներքո»: 1913–ից Հունաստանի կազմում է:

ԿՐԵՏԻՆԻԶՄ (ֆրանս.՝ cretin – տկարամիտ, ապուշ, թուլամիտ, կրետին), ներզատ. հիվանդություն, վահանագեղձի ֆունկցիայի անբավարարություն: Բնորոշվում է մտավոր և ֆիզ. զարգացման կասեցմամբ:

ԿՐԵՏՆԵՐ, թաղանթաթելավոր խայթող բոլոր միջատների (բացառությամբ մեղուների և մրջյունների) ընտանիք: Միջին և խոշոր չափերի միջատներ են (մինչև 40 *մմ*)՝ կրծքի և փորիկի միջև ցայտուն արտահայտված ցողունով: Հայտնի է մոտ 23 հզ. տեսակ՝ տարածված ամենուր: Բույսերի փոշոտողներ են: Լուրջ վնաս են հասցնում մեղվաբուծությանը:

ԿՐԵՏՈՎ Ստեպան Իվանովիչ (1919–1975), ռուս օդաչու: ԽՄ հերոս (1944, 1948), գնդ. (1960): ՀՄՊ–ի ժամանակ ծառայել է հեռահար գործողությունների ավիացիայում՝ որպես էսկադրիլիայի հրամ., կատարել է 400 մարտ. թռիչքներ:

ԿՐԵՏՈՎԻՉ Վացլավ Լեոնովիչ (1907–1993), ռուս կենսաքիմիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1991, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1962–ից): Աշխ–ները վերաբերում են բույսերի կենսաքիմիային, մոլ. ազոտը սևեռող կենսընթացի ֆերմենտաբանությանը, հացահատիկի և նրա վերամշակման մթերքների կենսաքիմիային: ԽՍՀՄ Պետ. մրց. (1972):

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀՀ ԿԳՆ, ստեղծվել է 1998–ին Երևանում՝ Մանկավարժ. գիտ–յունների ԳՀԻ–ի, Ուսուցիչների կատարելագործման հանրապետ. ինստ–ի, Հանրապետ. ուսումնամեթոդ. կենտրոնի, Բարձրագույն և միջին մասնագիտ. կրթության նախ–յան ուսումնամեթոդ. կաբինետի և ԿԳՆ ծրագրամեթոդ. վարչության հիման վրա: Մինչև 2004–ը՝ Կրթ. բարեփոխումների կենտրոն: Հիմն. գործառույթներն են մանկավարժների վերապատրաստման դասընթացների կազմակերպումն ու անցկացումը, ուս. գրկ–յան, ուսումնամեթոդ. պարագաների փորձաքննությունը, կրթության ոլորտի նորմատիվ փաստաթղթերի մշակումը ևն: Ունի մասնաճյուղեր ՀՀ մարզերում (11) և Լ.Ղ.–ում (1): Հիմնադրել և հրատարակում է շուրջ 10 անուն պարբ.: Տնօրեն՝ Նորայր Ղուկասյան:

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ», կրթ., մանկավարժ. շաբաթաթերթ (1932–ից, Երևան, 1932–34–ին՝ «Կուլտուրական ֆրոնտ», 1935–41–ին՝ «Խորհրդային դպրոց», 1941–89–ին՝

«Սովետական դպրոց», 1990–94-ին՝ «Դպրություն», 1995–97-ին՝ «Դպրոց», 1997-ից՝ «Կ.»)։ ՀՀ ԿԳՆ պաշտոնաթերթ։ Խմբ-ներ՝ Արտո Եղիազարյան, Աբգար *Մովսիսյան*, Աստուր Աստուրյան, Սերոբ *Ղազարյան*, Սիմակ *Սահակյան*, Սուրեն Խուդոյան, Արծրուն Բաղդասարյան, Աղվան Սուքիասյան, Լյուդվիգ *Կարապետյան*, Արմինե Օհանյան, Գագիկ *Մինասյան* (2005–ից)։

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ», բնագիտ., մաթ., հասարակագիտ., լեզվագիտ., գիտամեթոդ. հանդես (1997–ից, Երևան)։ Գլխ. խմբ.՝ Ռաֆիկ *Մարտիրոսյան,* պատ. խմբ.՝ Կամո Աթայան։

ԿՐԺԻԺԱՆՈՎՍԿԻ Գլեբ Մաքսիմիլիանովիչ (1872–1959), խորհրդ. պետ. գործիչ, գիտնական։ ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1929), փոխնախագահ (1929–39)։ Սոց. աշխ. հերոս (1957)։ 1920-ին՝ ԳՈԷԼՌՈ-ի հանձնաժողովի, 1921–23-ին՝ ՌԽՖՍՀ, 1925–30-ին՝ ԽՍՀՄ Պետպլանի նախագահ։ 1930–59-ին՝ ԽՍՀՄ ԳԱ Էներգետիկայի ինստ-ի տնօրեն։ Աշխ-ները վերաբերում են տնտեսության էլեկտրիֆիկացման հարցերին։ «Վարշավյանկա» և այլ երգերի հեղինակն է։

ԿՐԺԻԺԱՆՈՎՍԿԻ (Krzizanovski) Սիգիզմունդ Դոմինիկովիչ (1887–1950), լեհ ռուսագիր գրող։ «Հիշողություններ ապագայի մասին» (հրտ.՝ 1989), «Դրոշմակնիքը՝ Մոսկվա» (1925) վիպակներում, «Դիակի կենսագրությունը» (հրտ.՝ 1989) և այլ նովելներում ու փոքրիկ արձակ գործերում ներկայացրել է գրոտեսկ. իրականության այլաբան. պատկերը։ Հեղինակ է նաև պիեսների, ակնարկների, կինոսցենարների («Սուրբ Յորգենի տոնը», 1930, ևն), գրկ-յան մասին աշխ-ների։

ԿՐԺԻԺԻԿ (Křižik) Ֆրանտիշեկ (1847–1941), չեխ էլեկտրատեխնիկ։ Կատարելագործել է երկթող. ազդանշանումը և բլոկավորումը (1873)։ Հայտնագործել է խնայող. դիֆերենցիալ աղեղալամպը։ Հիմնադրել է չեխ. 1-ին էլեկտրատեխ. գործարանը (1881), կառուցել 1-ին էլեկտրակայանները (1888) և էլ. երկթող-ները (1903)։ Պրահայի «Երգող շատրվաններ» գունաերաժշտ. համալիրի (1891) ստեղծողներից է։

ԿՐԺԻՉԿԱ (Křička) Վավրժինեց (Լավրենտի, ծ. թ. անհտ–1570), չեխ ձուլագործ, զանգերի ձուլման վարպետ։ Ձուլագործ S. Յարոշի հետ 1563–69-ին ստեղծել է երգող շատրվան, որի ընկնող կաթիլները կրկնում էին Պրահայի զանգերի (Բելվեդեր ամրոցի առջևում դրված) ղողանջները։ Հեղինակ է «Զանգերի, թնդանոթների ձուլման, հրետանային չափիչ սարքերի, հրթիռների, պոմպերի, բազմաթիվ նախագծերով շատրվանների պատրաստման ձեռնարկ» աշխ-յան (1-ին անգամ տպագրվել է 1947-ին)։

ԿՐԻ (ինքնանվանումը՝ նեհինավակ՝ նույն լեզվով խոսող), ալգոնկինների խմբի հնդկացի ժողգ Կանադայում (ավելի քան 200 հզ., 2006) և ԱՄՆ-ում (2,5 հզ., 2000)։ Լեզուն՝ կրի։ Կաթոլիկ են, կան անգլիկան և այլ կրոնների հետևորդներ։

ԿՐԻԶՆԵՐ (ֆրանս.՝ crise – նոպա) (բժշկ.), հիվանդության հանկարծակի խիստ սրացումները (օր.՝ հիպերտոնիկ Կ.)։

ԿՐԻԺԱՆԻՉ (Križanić) Յուրի (մոտ 1618–1683), խորվաթ հանրագիտակ, գրող։ Պաշտպանել է «սլավոնական միասնության» գաղափարները, որոնք կյանքի կոչելու համար մեծ դեր է հատկացրել Ռուսաստանին։ Հեղինակ է «Քաղաքականություն» տրակտատի, բանաստեղծությունների։

ԿՐԻԿԱԼՅՈՎ Սերգեյ Կոնստանտինովիչ (ծ. 1958), ԽՍՀՄ տիեզերագնաց օդաչու (1989)։ Մայոր։ ԽՄ (1989), ՌԴ (1992) հերոս։ Թռել է «Սոյուզ-ՏՄ» տիեզերանավով և «Միր» ուղեծր. համալիրով (1988-ի նոյեմբ., 1989-ի ապրիլ, նաև 1991–92), «Դիսքավերի»-«Սփեյս Շաթլ» ուղեծր. աստիճանով (1994-ի փետր., 1998, 2000–01, 2005)՝ որպես բորտ-ճարտարագետ և մասնագետ (գումար. ժամանակը՝ 803 օր 9 *ժ* 42 *ր*), 8 ելք բաց տիեզերք՝ 42 *ժ* 26 *ր* ընդհ. տևողությամբ։

ԿՐԻԿՈՐՅԱՆ (Գրիգորյան) Երվանդ Հովհաննեսի (1892–1982), փիլ., նատուրալիզմի ներկայացուցիչ։ Փիլ. գիտ. դ-ր (1933)։ Նյու Յորքի Սիթի քոլեջի պրոֆ. (1921-ից)։ Աշխ-ները վերաբերում են գիտակցության և գիտ-յան մեթոդաբանության հարցերին։ Մերժել է հոգեկանի և կյանքի իդեալիստ. մեկնաբանությունը։ Կ-ի փիլ. դիրքորոշումը մոտ է բնագիտ. մատերիալիզմին։

ԿՐԻԿՈՐՅԱՆ Ներսես Հաջիքի (ծ. 1921), քիմիկոս։ ԱՄՆ Կալիֆոռնիայի համալսարանի Լոս Ալամոսի միջուկ. լաբորատորիայի վարիչ։ ՀՀ ԳԱԱ արտ. անդամ։ Աշխ-ները վերաբերում են միջուկ. թափոնների անվտանգության հարցերին։ Մասնակցել է «սառը պատերազմը» դադարեցնելու նպատակով ԽՍՀՄ-ի հետ տարվող բանակցություններին։

ԿՐԻՄՄԿԻ Ագաֆանգել Եֆիմովիչ (1871–1942), ուկրաինացի գրող, արևելագետ, հայագետ։ Ուկր. ԳԱ հիմնադիր-ակադ. (1918)։ Աշխ-ները վերաբերում են Արևելքի ժողգ-ների պատմությանն ու մշակույթին, ուկր-ի քերակ-յանը։ Հեղինակ է «Անդրեյ Լագովսկի» (1905) վեպի, նաև վիպակների, պատմվածքների, բանաստեղծությունների։ Ուսումնասիրել է նաև հայ ժողգ-ի պատմությունը («Հայերի պատմություն», անտիպ)։

ԿՐԻՄՄԿԻ Գերմոգեն Ֆիլիպովիչ (ծ. 1937), ռուս. ֆիզիկոս։ ՌԳԱ ակադ. (1997, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1987-ից), Յակուտիայի ԳԱ նախագահ (2001–03)։ Յակուտիայի գիտ. վաստ. գործիչ (1981)։ Աշխ-ները վերաբերում են տիեզ. ճառագայթների ֆիզիկային։ Յակուտիայի Պետ. մրց. (1997)։

ԿՐԻՇԱՆ ՉԱՆԴԱՐ (Krishan Chandar, 1913–1977), հնդիկ գրող։ Գրել է ուրդուով։ Հեղինակ է «Փոթորկի ողկույզներ...» (1954), «Պարտություն» (1958) վեպերի, «Ավանակի արկածները» (1958–65) եռերգության, «Երբ արթնացան արտերը» (1951), «Իմ հիշողությունների սոսինները» (1968) վիպակների, «Մենք վայրենիներ ենք» (1943) նովելների ժող-ի ևն։ Հայ. հրատարակվել են «Պատմվածքներ» (1956) ժող-ը, «Շրջված ծառը» (1967) հեքիաթ-վիպակը։

ԿՐԻՇՆԱ, հինդուիզմի գլխ. աստվածներից, համարվում է *Վիշնուի* մարմնավորումը (ավատար)։ Հինդուիստ. դից-յան մեջ Կ. պատկերվել է 2 կերպարանքով՝ իմաստուն արքայի և աստված. հովվի։

ԿՐԻՇՆԱ, **Կիստնա**, գետ Հնդկաստանի հվ-ում։ Երկ.՝ 1280 *կմ*, ավազանը՝ 330 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 1730 *մ³/վ*։ Սկիզբ է առնում Արմ. Գաթերից, հատում Դեկանի սարահարթը և թափվում Բենգալյան ծոց։ Ստորին հոսանքում նավարկելի է, ափին է Վիջայավադա ք-ը։

ԿՐԻՇՆԱՄՈՒՐՏԻ Ջիդու (1895/97–1986), հնդիկ կրոն. մտածող, բանաստեղծ։ 1910-ին աստվածաբանները (թեոսոֆներ) նրան հռչակել են աշխարհի նոր ուսուցիչ, որոնց հետ, սակայն, 1929-ին կապերը խզել է։ Ըստ Կ-ի՝ ճշմարտությունը բացահայտվում է միայն ինտուիտիվ կերպով, անհատի ազատ «զեղման» վիճակում։

ԿՐԻՇՆԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, հինդուիզմի առավել հայտնի ուղղություններից, որի գլխ. աստվածը *Կրիշնան* է։ Համարվում է նաև *վիշնայականության* ճյուղերից։ Հավանաբար սկիզբ է առել ոչ արիական ցեղերի պտղաբերության պաշտամունքի ակունքներից և կապված է հնագույն անասնապահ. ցեղերի աստվածությունների ու կովերի պաշտամունքի հետ։ Զարգացել է Դեկանի սարահարթի հս. մասի բհագավադականության կրոնից (մ. թ. ա. I դ., Բհագավադա աստծու պաշտամունքից, որի Սբ Գիրքը Բհագավադգիտան է)։ Կ. զանգված. կրոնի կարգավիճակ է ձեռք բերել, երբ աստվածապաշտությունը միավորվել է պաշտամունքի հայտնի ձևերին՝ ներառյալ երգեցողությունը և պարերը։ Կ-յան ամրապնդմանը նպաստել են կրոն. բանաստեղծների (Ջայադևա, Սուրդաս, Չոնդիդաշ և ուր.) ստեղծագործությունները։ Կ-յան զարգացման վրա մեծապես ազդել են կրոն. քարոզիչներ Վալաբհան և Չայտանյան. վերջինս համարվում է «գաուդիյա-վայշնավիզմ» ուղղության հիմնադիրը։ XX դ-ում ստեղծվել է Կ-յան միջազգ. կազմ-յունը։

ԿՐԻՇՏԱԼ Օլեգ Օլեքսանդրովիչ (ծ. 1945), ուկրաինացի նեյրոֆիզիոլոգ և կենսաֆիզիկոս։ Ուկրաինայի ԳԱ ակադ. (1997), ԽՍՀՄ ԳԱ թղթ. (1985), ԵԳԱ (1990) անդամ։ Աշխ-ները վերաբերում են նյարդ. բջիջների ֆիզիոլոգիային և կենսբ. թաղանթներին, այդ թվում՝ թաղանթների իոնային փոխանակության մեխանիզմներին։ ԽՍՀՄ և Ուկր. ԽՍՀ Պետ. մրց-ներ։

ԿՐԻՇՏՈՖՈՎԻՉ Աֆրիկան Նիկոլաևիչ (1885–1953), ռուս երկրաբան, հնէաբան-սաբան, գիտ. դպրոցի հիմնադիրը։ Ուկր. ԽՍՀ ԳԱ ակադ. (1945), ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1953)։ Աշխ-ները վերաբերում են երկրագնդի (հատկապես՝ Արլ. Ասիայի) բուսաշխարհի պատմությանը։ Սախալինում հայտնաբերել է նավթի հանքավայր։

ԽՍՀՄ Պետ. մրց. (1946)։

ԿՐԻՈ... (հուն.՝ kryos – սառնամանիք, սառույց), բարդ բառերի բաղադրիչ. ցույց է տալիս սառույցին, ցածր ջերմաստիճաններին վերաբերելը (օր.՝ *կրիոթերապիա*)։

ԿՐԻՈԳԵՆԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱ, գիտ-յան և տեխնիկայի բաժին. ուսումնասիրում է կրիոգենային (120 K-ից ցածր) ջերմաստիճանների ստացման, պահպանման ու օգտագործման հարցերը։ Հիմն. խնդիրներն են գազերի հեղուկացումը, գազ. գերհաղորդիչների խառնուրդների բաժանումը, գերհաղորդիչ և այլ էլեկտրատեխ. սարքավորումների սառեցումն ու ջերմապահպանությունը։

ԿՐԻՈԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ, էլեկտրոնիկայի բաժին. զբաղվում է ցածր ջերմաստիճաններում (120 K-ից ցածր) էլեկտրամագնիս. դաշտերի պինդ մարմնում լիցքակիրների հետ փոխազդեցությունից առաջացող երևույթների ուսումնասիրությամբ և դրանց կիրառությամբ էլ. սարքերի և սարքավորումների ստեղծմամբ։

ԿՐԻՈԹԵՐԱՊԻԱ, **ցրտաբուժություն:** Մարմնի որևէ մասի չափավոր սառեցումը՝

ցավը մեղմելու համար (օր.՝ սալջարդի, կոտրվածքների և այլ դեպքերում), բորբոք. կենսաընթացների (լեղապարկի, որդանման ելունի բորբոքումներ), արյունահոսության (քթային, թոքային) ենի ժամանակ։

ԿՐԻՈԼԻԹ, ֆտորիդների ենթադասի միներալ՝ $Na_3[AlF_6]$։ Կարծր.՝ 2,5, խտ.՝ շուրջ 3 *գ/սմ*^{3}։ Գլխ. հանքավայրը Գրենլանդիայում է (Իվիգտուտ)։ Կիրառվում է ալյումինի էլեկտրամետաղաձուլության մեջ։ Ավելի հաճախ օգտագործվում է արհեստ. Կ.։

ԿՐԻՈԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, կենսբ-յան բաժին. ուսումնասիրում է ցածր և գերցածր ջերմաստիճանների (0°C–ից մինչև բացարձակ 0°) ազդեցությունը կենդանի օրգանիզմի վրա։ Հիմն. խնդիրը կյանքի ցածր ջերմաստիճանների սահմանների հաստատումն է, ցրտի պայմաններում կյանքի ուսումնասիրությունը, օրգանիզմի կայունությունը ցրտի և սառեցման պայմաններում, բջիջները և հյուսվածքները սառեցումից պաշտպանելու եղանակների մշակումը։

ԿՐԻՈՍԿՈՊԻԱ, ***սառնաչափություն***, նյութի մոլ. զանգվածի որոշման ֆիզքիմ. եղանակ՝ հիմնված մաքուր լուծիչի և լուծույթի սառեցման ջերմաստիճանների տարբերության չափման վրա։ Տես նաև *Ռաուլի օրենք*։

ԿՐԻՈՍՏԱՏ (< *կրիո*... և հուն.՝ ...statos – կանգնած, անշարժ), եռման ցածր ջերմաստիճաններով հեղուկացված գազերով (օր.՝ ազոտ, ջրածին, հելիում) աշխ. ծավալում մշտ. (120 K–ից ցածր) ջերմաստիճանների պահպանման սարք։

ԿՐԻՈՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, վիրաբուժ. բուժման եղանակ՝ հյուսվածքների խորը սառեցմամբ։ Կիրառվում է նյարդավիրաբուժության, ակնաբանության, քիթկոկորդականջաբանության և ուրոլոգիայի բնագավառներում։

ԿՐԻՈՏՐՈՆ, էլեկտրոն. փոքրաչափ փոխարկիչ սարք. գործողությունը հիմնված է ***գերհաղորդականության*** երևույթի վրա, որն արտաքին մագնիս. դաշտի ազդեցությամբ թռիչքներով փոխում է իր վիճակը։ Մշակվել է ԱՄՆ–ում (1955). նախատեսված է հիմնականում ԷՀՄ–ների հիշողության բջիջներում և տրամաբ. տարրերում օգտագործման համար։

ԿՐԻՈՔԻՄԻԱ, ուսումնասիրում է հեղուկ և պինդ ֆազերում նյութերի քիմ. փոխարկումները ցածր ջերմաստիճաններում։ Կ–ի հիմն. խնդիրներն են քիմիապես անկայուն միացությունների ստացումը, նյութերի քիմ. ակտիվության ցածրջերմաստիճան. սահմանի բացահայտումը, ցածր ջերմաստիճանների կիրառությամբ տեխ. շարժընթացների մշակումը։

ԿՐԻՈՖԻԼՆԵՐ, ***սառցասերներ***, օրգանիզմներ (միաբջիջ ջրիմուռներ, որոշ որդեր և միջատներ), որոնք ապրում են ձյան և սառույցի մակերևույթին, սառցակալած ջրերում, ջերմաստիճանի նվազման դեպքում սառցափակվում են։ Մանրէաբանության մեջ կոչվում են պսիքրոֆիլներ (< հուն. psychros – սառը և ...*ֆիլ*)։

ԿՐԻՈՖԻՏՆԵՐ (< *կրիո*... և հուն.՝ phyton – բույս), ցուրտ և չոր վայրերի բույսեր. գոյացնում են տունդրայի և ալպ. մարգագետինների բուսածածկույթի հիմքը։

ԿՐԻՊԿԵ (Kripke) Սոլ Աարոն (ծ. 1940), ամերիկացի տրամաբան և փիլ., վերլուծ. փիլ–յան ներկայացուցիչ։ Ստեղծել է մոդալ տրամաբ–յան հնարավոր աշխարհների իմաստաբանություն, առաջարկել հատուկ անունների յուրօրինակ հայեցակարգ (ռեֆերենցիաների դիպվածային տեսություն), մշակել է ճշմարտության և իմաստաբան. պարադոքսների խնդիրների տեսություն։

ԿՐԻՊՅԱԿԵՎԻՉ Իվան Պետրովիչ (1886–1967), ուկրաինացի պատմաբան, հայագետ։ Ուկր. ԽՍՀ ԳԱ ակադ. (1958)։ Աշխ–ները վերաբերում են Ուկրաինայի ավատատիր. շրջանի պատմությանը։ Անդրադարձել է Ուկրաինայի հայկ. գաղթավայրերի (հատկապես՝ Լվովի) միջնադար. պատմությանը, հայ–ուկր. կապերին։

ԿՐԻՊՏԱ (լատ.՝ crypta, < հուն. kriptos), ստորգետնյա կամարակապ կառույց Հին Հռոմում, արևմտաեվրոպ. միջնադար. ճարտ–յան մեջ՝ ժամատուն՝ տաճարի տակ, որտեղ կատարվել են թաղումներ։

ԿՐԻՊՏՈ... (հուն.՝ kryptos – թաքուն, գաղտնի), բարդ բառերի բաղադրիչ. ցույց է տալիս գաղտնի գործողության կամ վիճակին (օր.՝ կրիպտօրխիզմ՝ ***գաղտնամորձություն***) վերաբերելը։

ԿՐԻՊՏՈԿՈԿՈՒԶ, կենդանիների և մարդկանց հազվադեպ ու ծանր հիվանդություն։ Հարուցիչները խմորասնկերն են։ Ախտահարում են թոքերը, ԿՆՀ–ն, մաշկ. և ենթամաշկ. հյուսվածքները։

ԿՐԻՊՏՈՆ (Krypton), Kr, տարրերի պարբեր. համակարգի VIII խմբի քիմ. տարր։ Կարգաթիվը՝ 36, ա. զ.՝ 83,80։ Իներտ գազ է։ Անվանումը՝ հուն. kryptos – թաքուն, գաղտնի բառից (կապված ստացման դժվարությունների հետ)։ Խտ.՝ 3,745 *գ/սմ*^{3}, $t_{եռ.}$ – 153,35°C։ Կիրառում են հիմնականում Կ–ային լամպերում, գազապարպում. խողովակներում և լազերներում։ Կ–ի երկֆտորիդը՝ KrF_2, ուժեղ օքսիդիչ է և ֆտորացնող ագենտ։

ԿՐԻՊՏՈՖԻՏՆԵՐ (< *կրիպտո*... և հուն.՝ phyton – բույս), ***թաքնաբույսեր***, բույսեր, որոնց աճման բողբոջները հողում են (գեոֆիտներ) կամ ջրի տակ (հիդրոֆիտներ)։ Բույսերի կենսաձև է։

ԿՐԻՍՊԻ (Crispi) Ֆրանչեսկո (1818–1901), Իտալիայի վարչապետ՝ 1887–91 և 1893–96–ին։ Մասնակցել է իտալ. Ռիսորջիմենտոյին։ Վարել է ներքին հակադեմոկրատ. և արտաքին նվաճող. քաղ–յուն։ Կ–ին հարկադրել են հեռանալ քաղ. ասպարեզից։

ԿՐԻՎԵԼԼԻ (Crivelli) Կառլո (1430–ի և 1435–ի միջև–մինչև 1495), իտալացի գեղանկարիչ։ Գործերին բնորոշ են ինազոյն ձևերի ոճավորումը, գույների շքեղությունն ու նրբությունը, դեկորատիվ տարրերի առատությունը, ոսկե երանգները։ Ստեղծել է զոհարանի («Ավետումը Սբ Էմիդիեի հետ», 1486) բազմապատկերներ՝ ոչ մեծ կաղապար. կերպարներով։

ԿՐԻՎԻՆ Ֆելիքս Դավիդովիչ (ծ. 1928), հրեա ռուսագիր գրող։ 1998–ից՝ Իսրայելում։ Հեղինակ է արձակ և չափածո երգիծ. հեքիաթ–առակների, էպիգրամների, պատմվածքների, վիպակների («Իրերի աշխարհում», 1961, «Աստվածային պատմություններ», 1966, «Հակինթե կղզիներ», 1978, «Շրջաններ ավազի վրա», 1985, «Հավիտենության գյուտարարը», 1985, «Սիրամարգի պոչը», 1988, «Ողբ Հերովդես թագավորի համար», 1995)։

ԿՐԻՎՈԼՈՒՅԿԻ Դմիտրի Ալեքսանդրովիչ (1939–2004), ռուս. էկոլոգ։ ՌԳԱ թղթ. անդամ (1991)։ Եղել է ՌԳԱ Մակաբուծաբանության ինստ–ի տնօրեն (2002–04)։ Աշխ–ները վերաբերում են կենսահամակեցությունների մեջ էկոլոգ. փոխազդեցության, քիմ. տարրերի կենսաշրջանի միգրացիայի, ճառագայթակտիվ աղտոտման կենսաինդուկցիայի հարցերին։ ԽՍՀՄ Պետ. մրց. (1980)։

ԿՐԻՎՈՅ ՌՈԳ, ք. Ուկրաինայում՝ Ինգուլեց գետի ափին։ Բն.՝ 730,7 հգ. (2009)։ Երկաթ. հանգույց է, արդ. խոշոր կենտրոն (մետաղաձուլություն, մեքենաշինություն, թեթև, սննդի արդ–յուն)։ Առաջին անգամ հիշատակվում է 1775–ին՝ որպես փոստ. կայան։

ԿՐԻՎՈՆՈՍ Մաքսիմ (ծ. թ. անհտ–1648), ուկրաինացի ռազմ. գործիչ, չերկասյան գնդ. (1648), նշանակովի հետման (1648–ի հունիսից)։ Աչքի է ընկել 1648–54–ի ուկրաինացի և բելառուս ժողղ–ների ազատագր. պատերազմում։ Լեհերից ազատագրել է Չախափնյա Ուկրաինան և Աջափնյա Ուկրաինայի զգալի մասը, իր ջոկատով մեծ դեր է խաղացել ***Կորսունի ճակատամարտում***։

ԿՐԻՎՈՇԵԵՎ Նիկոլայ Ալեքսեևիչ (1930–1998), ռուս քիմիկոս։ ՌԳԱ թղթ. անդամ (1991, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1979–ից)։ Աշխ–ները վերաբերում են էներգատար համակարգերի կոնդենսացման քիմիային ու տեխնոլոգիային և էներգիայի փոխակերպմանը։ ԽՍՀՄ Պետ. (1967), Լենինյան (1976) մրց–ներ։

ԿՐԻՎՈՇԵԻՆ Ալեքսանդր Վասիլևիչ (1857–1921), ռուս. պետ. գործիչ, հոֆմայստեր (1909)։ 1906–08–ին՝ Արքուն. և Գյուղաց. բանկերի կառավարիչ։ 1906–ից՝ Պետ. խորհրդի անդամ, 1908–15–ին՝ Երկրագործության և հողաշին–յան գլխ. կառավարիչ։ Ղեկավարել է ստոլիպին. ագրարային բարեփոխումները։ 1920–ին՝ Պ. Ն. Վրանգելի «Հարավային Ռուսաստանի կառավարության» ղեկ., այնուհետև՝ վտարանդի։

ԿՐԻՎՉԵՆՅԱ Ալեքսանդր Ֆիլիպովիչ (1910–1974), ռուս երգիչ (բաս)։ ԽՍՀՄ ժող. արտիստ (1956)։ 1949–ից՝ Սոսկվայի Մեծ թատրոնի մեներգիչ (Բազիլիո՝ Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», Բորիս Գոդունով՝ Մ. Պ. Մուսորգսկու «Բորիս Գոդունով», ևն)։ ԽՍՀՄ Պետ. մրց. (1951)։

ԿՐԻՏԻԱՍ (Critias, մ. թ. ա. մոտ 460–403), հույն փիլ., գրող, հռետոր։ 411–ին՝ Աթենքում «չորսհարյուրականների» օլիգարխիկ կառ–յան անդամ, 404–ին՝ «երեսուն տիրակալների» ղեկ.։

ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ, նյութի առանձնահատուկ հատկությունների ի հայտ գալը ***կրիտիկական վիճակում***։ Օր.՝ կրիտիկ. ***օպալեսցենտումը***, ջերմունակության անկանոն աճը, մագնիս. ընկալունակության և դիէլեկտրիկ. թափանցելիության աճը ֆեռոմագնիսների և սեգնետոէլեկտրիկների ***կյուրիի կետերի*** շրջակայքում։

ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՋԱՆԳՎԱԾ, ճառագայթակտիվ նյութի նվազագույն զանգվածը, որի դեպքում կարող է ընթանալ ատոմ. միջուկների տրոհման ինքնապահպանվող շղթ. ռեակցիան։

ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԼՈՒՍԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ***մագնիսական լուսատվություն, էդինգտոնյան լուսատվություն***, աստղի սահման. լուսատվությունը, որը գերազանցելիս խախտվում է աստղի ճառագայթ. հավասարակշռությունը։ Հասկացությունը ներմուծել է Ա. ***Էդինգտոնը*** 1920–ական թթ–ի կեսերին։

ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏ, թերմոդինամիկ. վիճակի դիագրամի վրա ***կրիտիկական վիճակին*** համապատասխանող կետը։

Հեղուկ-գոլորշի երկֆազ հավասարակշռության Կ. կ. հավասարակշռության կորի վերջնակետն է և բնութագրվում է T_k ջերմաստիճանի, P_k ճնշման և V_k ծավալի կրիտիկ. արժեքներով: Կ. կ. ***ֆազային անցման*** կետի մասնավոր դեպքն է, որին բնորոշ է թերմոդինամիկ. կայունության կորուստը:

ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՀՈՍԱՆՔ, էլ. հոսանքի առավելագույն արժեքը, որը կարող է առանց դիմադրության անցնել ***գերհաղորդչի*** միջով:

ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ, 1. երկու ֆազերի հավասարակշիռ համագոյության սահման. ջերմաստիճանը, որից բարձր ջերմաստիճաններում վերանում է այդ ֆազերի տարբերությունը: 2. **Լուծելիության Կ. ջ.**, հեղուկ խառնուրդի սահմանափակ լուծելիություն ունեցող բաղադրիչների փոխադարձաբար անսահմանափակ լուծելի դառնալու ջերմաստիճանը: 3. Նյութերի ***գերհաղորդականության*** և ***գերհոսունության*** հատկությունները կորցնելու ջերմաստիճանը:

ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿ (ֆիզ.), ***կրիտիկական կետում*** և նրա շրջակայքում առաջացող նյութի վիճակ, երբ հավասարակշռության մեջ համագոյակցող ֆազերն իրենց ֆիզ. հատկություններով դառնում են իրարից չտարբերվող: Կ. վ-ի համար բնորոշ է ***կրիտիկական երևույթների*** առաջացումը, նաև ֆազ. անցման կարգի փոփոխությունը՝ առաջինից երկրորդի, որոնք ուղեկցվում են այդ անցման կինետիկայի բնույթի փոփոխությամբ: Կ. վ-ում հեղուկ-գոլորշի համակարգում հեղուկի և գոլորշու ֆազերի տեսակարար կշիռները դառնում են նույնը, ֆազ. անցման ջերմությունը դառնում է զրո, անհետանում են ֆազերի բաժանման սահմանները և մակերևութ. լարվածությունը: Այդ պատճառով Կ. վ. կարելի է դիտարկել որպես միաֆազ համակարգի սահման. վիճակ:

ԿՐԻՏՅԱՆ Արսեն Վարոսի (1850–1910), ազգ.-ազատագր. շարժման գործիչ, մանկավարժ: 1869-ի ապրիլին Կ-ի գլխավորությամբ Ալեքսանդրապոլում հիմնադրվել է 1-ին ազգ.-ազատագր. գաղտնի խմբակը՝ «Բարենպատակ ընկերությունը»: 1875-ի ապրիլին բանտարկվել է, ընկ-ը՝ ցրվել:

ԿՐԻՔԵՏ (անգլ.՝ cricket), թիմային (11-ական մարզիկ) մարզախաղ՝ գնդակով և զարկաններով՝ 80 x 60–70 *մ* չափերով ձվաձև խոտածածկ դաշտում: Նպատակը գնդակի նետումներով հակառակորդի դռնակը (դարպասը) քանդելն է: Հիշեցնում է ***բեյսբոլը*** և ***լապտան***: Առաջացել է միջին դարերում Անգլիայում: Տարածված է Մեծ Բրիտանիայում, Ավստրալիայում, Կանադայում և այլուր: Օլիմպ. խաղերում ընգրկվել է 1900-ին: Կ-ի միջազգ. խորհուրդը (հիմն.՝ 1909) միավորում է 103 երկիր (2016):

ԿՐԾՈՍԿՈՐ, մարդու և ցամաք. ողնաշարավորների թրաձև կենտ, տափակ ոսկրը, որը կազմում է մարդու կրծքավանդակի առաջային, իսկ կենդանիների կրծքավանդակի՝ ստորին պատի միջին մասը:

ԿՐԾՈՍԿՈՐ-ԱՆԴՐԱԿԱՅԻՆ ՀՈԴ (articulatio sternoclavicularis), թամբաձև, անհամատեղելի հոդ: Ունի բավական ընդարձակ հոդաշապիկ և մի շարք կապաններ: Հոդի լայն. առանցքի շուրջ անրակը պտտվում է առաջ ու հետ, սլաքայինի շուրջ շարժվում վեր ու վար, ուղղահայացի շուրջ՝ առաջ ու հետ:

ԿՐԾ-ՔԱՄՋԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ, **պլևրիտ**, կրծքամզի բորբոքումը տուբերկուլոզի, թոքաբորբի, ռևմատիզմի և այլ հիվանդությունների ժամանակ: Կարող է ընթանալ կրծքամզի խոռոչի մեջ առանց արտաքիրտի առաջացման (չոր Կ. բ.) և արտաքիրտով (թաց Կ. բ.): Ախտանշանները՝ կրծքավանդակի ցավեր՝ կապված շնչառության հետ, հազ, ջերմաստիճանի բարձրացում, հևոց ևն:

ԿՐԾ-ՔԱՄԻՋ, պլևրա (հուն.՝ plevra – կողք, պատ), մարդու և կաթնասունների բարակ շճաթաղանթ, որը ծածկում է թոքերը և կրծքի խոռոչը ներսից:

ԿՐԾ-ՔԱՅԻՆ ՀԵՂՁՈՒԿ, ստենոկարդիա (< հուն. stenos – նեղ, անձուկ և kardia – ***սիրտ***), սրտի իշեմիկ հիվանդության ձև. կրծքավանդակի կենտրոնում կամ ձախ կեսում սեղմող (ճնշող) ցավերի նոպաներ, որոնք ճառագայթվում են դեպի ձախ ուսը, ձեռքը և պարանոցը, ուղեկցվում է վախի զգացումով և թուլությամբ: Սովորաբար տևում է մի քանի րոպե: Առաջին օգնությունը՝ վալիդոլ, նիտրոգլիցերին (լեզվի տակ), մանանեխի ծեփուկներ (կրծոսկրին):

ԿՐԾ-ՔԱՈՐՈՎԱՅՆԱՅԻՆ ՄԻՋՆՈՐՄ, **ստոծանի**, մարդու և կաթնասուն կենդանիների կրծքի և որովայնի խոռոչները սահմանազատող մկանաջլային միջնորմ: Մասնակցում է շնչառ. շարժումներին. շնչառման ժամանակ իջնում է, արտաշնչման ժամանակ՝ բարձրանում:

ԿՐԾ-ՔԱՎԱՆԴԱԿ, կրծքային ողերի, կողերի և կրծոսկրի միացություն, որն ստեղծում է մարդու, կաթնասունների, թռչունների և սողունների ուսագոտու համար կայուն հենարան: Կաթնասունների Կ-ի ներսի տարածությունը (Կ-ի խոռոչ) որովայնի խոռոչից բաժանված է ***կրծքաորովայնային միջնորմով*** (ստոծանի):

ԿՐԿԵԱՇԱՐՅԱՆ (Գրքեաշարյան) Հակոբ Միսակի (ծ. 1928), վնասվածքաբան, վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր, պրոֆ. (1970): Սերժ-Պերճ ***Կրկեաշարյանի*** և Սիմոն ***Կրկյաշարյանի*** եղբայրը: 1978-ից աշխատել է Փարիզում: Աշխ-ները վերաբերում են ոսկրերի բնածին արատների՝ իր առաջարկած եղանակներով վիրահատման և բուժման հարցերին: Լիբանանահայ բժշկ. ընկ-յան (1973–78), իր նախաձեռնությամբ կազմակերպված Փարիզի «Արարատ» միջազգ. ԳՄ (1986–ից) նախագահ: Փարիզի համալսարանի «Վարպետ վիրաբույժ» տիտղոս (1958): ԵՊԲՀ պատվ. դ-ր (1994):

ԿՐԿԵԱՇԱՐՅԱՆ Սերժ-Պերճ Միսակի (ծ. 1933), ֆիզքիմիկոս, դեղաբան: Հակոբ ***Կրկեաշարյանի*** և Սիմոն ***Կրկյաշարյանի*** եղբայրը: Սորբոնի համալսարանի դ-ր (1966), պրոֆ. (1970): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (1998): Աշխ-ները վերաբերում են 3 բենզիլ-քրոմոնների հակաալերգ., հակահիստամին. միացությունների սինթեզին, որոնց հիման վրա Ֆրանսիայում արտադրում են բազմաթիվ դեղանյութեր ու դրանց ածանցյալները: Կազմել է Ֆրանսիայում արտադրվող դեղանյութերի տեղեկատու (1994): Փարիզի «Արարատ» միջազգ. ԳՄ փոխնախագահ (1986–ից):

Ֆրանսիայի դեղաբանության ազգ. ակադ-ի մրց-ներ, ՌԳԱ Պ. Կապիցայի անվ. (1996) և «Պետրոս Մեծ» (1996) մեդալներ:

ԿՐԿԵՍ, 1. թատերարվ-ի տեսակ: Ընդգրկում է ծաղրածուական արվ-ը, ակրոբատիկան, լարախաղացությունը (էկվիլիբրիստիկա), կրկես. երաժշտ. արտասովոր (էքսցենտրիկ) համարներ, իլյուզիոնիզմը, աճպարարությունը ևն: 2. Շենք (արենա)՝ կրկես. ներկայացումների համար: Հայ իրականության մեջ Կ-ի մասին ամենահին գր. վկայությունը V դ-ից է: Հայ միջնադար. Կ-ները անվանել են «թատր» և «թէատրոն»:

ԿՐԿԵՍԱՅԻՆ ԽԱՂԵՐ *ժողովրդական*, կրկես. ներկայացումների, տոնակատարությունների և այլ առիթներով կատարվող թատեր., սպորտ. և կենդանակոիվ խաղեր: Դրանք Հայաստանում կատարել են շրջիկ լարախաղացները, ձեռնածուները, ծաղրածուները, ըմբիշները և ուր.: Հայ պատմագրության մեջ հնագույն Կ. խ-ի վերաբերյալ սակավաթիվ տեղեկություններ կան Եզնիկ Կողբացու (V դ.), Դավիթ Անհաղթի (V դ-ի վերջ–VI դ-ի սկիզբ) երկերում:

ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ Սիմոն Միսակի (1923–2011), պատմաբան, աղբյուրագետ, թարգմանիչ: ՀՀ ԳԱԱ թղթ. (2000), Հռոմի «Տիբերինա» հաս. գիտ-յունների և արվ-ի ակադ-ի թղթ. (1987) անդամ: Հակոբ և Սերժ-Պերճ ***Կրկեաշարյանների*** եղբայրը: Աշխ-ները վերաբերում են Հին Հայաստանի հաս., տնտ., քաղ. պատմությանը, աղբյուրագիտ-յանը: Բնագրերից հայ. է թարգմանել հույն պատմիչների աշխ-ներից, նոր ժամանակների հեղինակների գործերից: ՀԳՄ Ե. Չարենցի անվ. (1986), ՀԳՄ և Մայր աթոռ Սբ Էջմիածնի «Կանթեղ» (2003) մրց-ներ:

ԿՐԿՆԱԿԻ ԱՍՏՂԵՐ, փոխադարձ ձգողության ազդեցությամբ ընդհ. ծանրության կենտրոնի շուրջն էլիպսային ուղեծրով պտտվող ***աստղեր***: Դիտարկման եղանակից կախված՝ Կ. ա. բաժանվում են 3 դասի՝ ակնադիտ., խավարումսպեկտր., սպեկտր. կրկնակի:

ԿՐԿՆԱԿԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՇԵՐՏ, առաջանում է տարբեր նշանների, բայց նույն մակերևութ. խտություն ունեցող էլ. լիցքերի իրար մոտ ստեղծված 2 շերտերով. այդ իսկ պատճառով այն չեզոք է: Առաջանում է 2 ֆազերի բաժանման սահմանին. օր.՝ էլեկտրոլիտում՝ պինդ էլեկտրոդի և հեղուկի սահմանին: Կարող է առաջանալ նաև նույն ֆազի ներսում, օր.՝ զազանման պլազմայում: Շերտի կառուցվածքն էապես ազդում է էլեկտրաքիմ. ռեակցիայի (օր.՝ էլեկտրոլիզի) մեխանիզմի և կինետիկայի, էլեկտրակինետիկ. երևույթների վրա:

ԿՐԿՆԱԿԻ ՃԱՌԱԳԱՅԹԱԲԵԿՈՒՄ, լույսի ճառագայթի երկատում անիզոտրոպ միջավայրով անցնելիս. տեղի է ունենում միջավայրի բեկման ցուցչի՝ լույսի ալիքի էլ. դաշտի լարվածության ուղղությունից կախվածության հետևանքով: Անիզոտրոպ միջավայրում լույսի ալիքը բաժանվում է 2 ալիքի՝ **սովորական** և **անսովոր**, որոնց բևեռացման հարթությունները փոխուղղահայաց են միմյանց:

ԿՐԿՆԱԿԱՏՅԱՐ (Gallinago media), մորակոտցարների ընտանիքի թռչուն: Չվող-ձմեռող է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 27–29, թևերի բացվածքը՝ 47–50 *սմ*, կ. զ.՝ 135–210 *գ*: Սնվում է ջր. և ցամաք. անողնաշարներով: Գարնան. որսն արգելված է:

ԿՐԿՈՆՈՇԵ (Կարկոնոշև, լեհ.՝ Karkonosze), **Իսպոլինյան լեռներ**, լ-շղթա Լեհաստանում և Չեխիայում, Սուդետների առավել բարձրադիր մասը (1602 *մ*, Մսեժկա լ.):

Զարգացած է գրոսաշրջությունը, դահուկ. սպորտի կենտրոն է: Գործում է ազգ. պարկ:

ԿՐՃԻԿՅԱՆ Անդրանիկ (1819–1894), բնագետ, բժիշկ: 1844–51-ին աշխատել է Կ. Պոլսի կայսեր. հիվանդանոցում, 1851–87-ին դասավանդել է զինվ. բժշկ. վարժարանում: 1887-ին ստացել է «փաշա» կոչումը և նշանակվել բժշկ. վարժարանի տնօրեն: Հեղինակ է հիգիենայի կամ առողջ ապրելու մասնավոր և ընդհ. կանոնների, բնագիտ-յան դասագրքերի:

ԿՐՃՈՒՆԻՔ, գվո Մեծ Հայքի Վասպուրական նահանգ-ում: Համապատասխանում է Կոտուր գետի ակունքների շրջանին:

ԿՐՅՈՄԵՐ (Krömer) Հերբերտ (ծ. 1928), գերմանացի ֆիզիկոս: 1954-ից՝ ԱՄՆ-ում: Առաջ է քաշել (1954) հետերոկառուցվածքներով երկրևեռ տրանզիստորի գաղափարը. առաջարկել է (1963) հետերոանցումը պաշտպանել ավելի լայն արգելված գոտի ունեցող այլ կիսահաղորդչ. կառուցվածքներով՝ սենյակ. ջերմաստիճանում անընդհատ ինվերս. բնակվածություն ստանալու համար: Նոբելյան մրց. (2000, ժ. Ի. *Ալֆյորովի* հետ):

ԿՐՅՈՒԳԵՐ (Kruger) Պաուլուս Ստեֆանոս Յոհաննես (1825–1904), Տրանսվաալի Բուրական Հանրապետության նախագահ՝ 1883–1900-ին: Աֆրիկ. բնակչության դեմ բուրերի ռազմ. գործողությունների մասնակից: Անգլո-բուր. պատերազմի ժամանակ (1899–1902)՝ բուր. դիմադրության շարժման առաջնորդներից:

ԿՐՅՈՒԳԵՐ (Krueger) Ֆելիքս (1874–1948), գերմանացի հոգեբան և փիլ.: «Ամբողջական հոգեբանության» լայպցիգյան դպրոցի հիմնադիրը:

ԿՐՅՈՒԳԵՐՍԴՈՐՊ (Krugersdorp), ք. ՀԱՀ-ում: Բն.՝ 423 հզ. (2010): Ոսկու և ուրանի արդյունահանման կենտրոն է: Հիմնադրվել է 1887-ին:

ԿՐՅՈՒԿՈՎ Ադրիան Ալեքսանդրովիչ (1849–1908), ռուս ակնաբան: Մոսկվայի ակնաբան. ընկ-յան հիմնադիրը (1876): Հաստատել է ցանցաթաղանթի լուսազգայունության սահմանները՝ տեսողության սրությունը որոշելու համար:

ԿՐՅՈՒԿՈՎ Ալեքսանդր Նիկոլաևիչ (1878–1952), ռուս թերապևտ, Ռուսաստանում կլինիկ. արյունաբանության գիտ. դպրոցի հիմնադիրներից: ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1948): Աշխ-ները վերաբերում են արյունաստեղծման տեսությանը, անհետաձգելի ախտորոշմանը և բուժմանը: Ուզբեկստանում հիմք է դրել արևադարձ. ախտաբանության ուսումնասիրությանը:

ԿՐՅՈՒՉԿՅԱՆ Գագիկ Յուրիի (1946–2016), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1986), պրոֆ. (1992): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006): Աշխ-ները վերաբերում են լազեր. ֆիզիկային, քվանտ. օպտիկային և քվանտ. ինֆորմացիոն տեխնոլոգիաներին, կոմպլեքս համակարգերի մոդելավորմանն ու համակարգչ. ֆիզիկային: ՀՀ նախագահի մրց. (2002):

ԿՐՅՈՒՉԿՈՎ Նիկոլայ Աֆանասևիչ (1910/11–1994), ռուս կինոդերասան: ՌԽՖՍՀ (1950), ԽՍՀՄ ժող. (1965) արտիստ: Սոց. աշխ. հերոս (1980): Մարմնավորել է հերոս. և քնար. կերպարներ «Ծայրամաս», «Տրակտորիստներ», «Հրացանավոր մարդը», «Խոզապահուհին և հովիվը», «Դատավարություն», «Հեռու արևմուտքում» և այլ ֆիլմերում: ԽՍՀՄ Պետ. (1941), «Նիկա» (1990) մրց-ներ:

ԿՐՅՈՒՉԿՈՎ Վլադիմիր Ալեքսանդրովիչ (1924–2007), ռուս պետ. գործիչ, բանակի գեն. (1988): 1978-ին՝ ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահի տեղակալ, 1988–91-ին՝ նախագահ: 1991-ի օգոստ. 19–21-ի ճգնաժամի օրերին՝ ԳԿԳՊ անդամ: Դատապարտվել է, 1994-ին համաներմամբ ազատվել:

ԿՐՅՈՒՎԵԼՅԵ (Cruveilhier) Ժան (1791–1874), ֆրանսիացի ախտաբան-անատոմ: Հեղինակ է «Մարդու ախտաբանական անատոմիա» (1829–42) և «Ընդհանուր ախտաբանական անատոմիա» (1849–64) դաս. աշխ-ների: Նկարագրել է պորտերակի չսերտաճման համախտանիշը (Կ–Բաումգարտենի համախտանիշ), հարաճուն ամիոտրոֆիայի ողնուղեղ. ձևը (1853, այսպես կոչված՝ Կ-ի լուծանք), ստամոքսի քրոնիկ. պեպտիկ խոցը (1829), ձևաբան. փոփոխությունները՝ ցրված սկլերոզի ժամանակ:

ԿՐՈ (Cros) Շառլ (1842–1888), ֆրանսիացի բանաստեղծ, գյուտարար: Առաջիններից է գտել գունավոր լուսանկարներ ստանալու եղանակը, հիմնավորել ձայնագրի (մինչև Տ. Ա. Էդիսոնը) և, այսպես կոչված, պալեոֆոնի (խոսքի վերարտադրման և ձայնագրման սարք) գործողությունների սկզբունքները (1877): Հեղինակ է «Սանդալե արկղիկ» (1873), «Մագիլներից պատրաստված մանյակ» (1908) բանաստեղծությունների ժող-ների:

ԿՐՈԳ (Krogh) Ավգուստ (1874–1949), դանիացի ֆիզիոլոգ: Բացահայտել է մազանոթ., արյան շրջանառության կարգավորման մեխանիզմները և այդ շրջանառության դերը նյութափոխանակության մեջ: Նոբելյան մրց. (1920):

ԿՐՈԳ Քրիստիան (1852–1925), նորվեգացի գեղանկարիչ, գրող: Պատկերել է ռեալիստ. տեսարաններ նավաստիների, աղքատ քաղաքաբնակների կյանքից («Հիվանդ աղջիկը», 1882, «Վեկը դեպի ձախ», 1879, ևն): Ստեղծել է պատկերներ իր՝ սոցիալ-քննադատ. ուղղվածությամբ գր. ստեղծագործությունների թեմաներով («Ալբերտինե» վեպ ևն):

ԿՐՈԼ (անգլ.՝ craul – բառացի՝ սողալ), մարզ. լողաձև: Ժող. *թևալողի* կատարելագործված տարատեսակն է: Տարբերում են Կ. կրծքի վրա և Կ. մեջքի վրա:

ԿՐՈԽԻՆ Օլեգ Նիկոլաևիչ (ծ. 1932), ռուս ֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (2000, թղթ. անդամ՝ 1991-ից): Առաջարկել է լազեր. ջերմամիջուկային սինթեզի գաղափարը:

Լենինյան (1964), ԽՍՀՄ Պետ. (1982), ՌԳԱ Դեմիդովյան (2005) մրց-ներ:

ԿՐՈՄԵԼԻՆԿ (Crommelynck) Ֆեռնան (1886–1970), բելգիացի ֆրանսիագիր դրամատուրգ: Հեղինակ է գրոտեսկ. պիեսների, նաև «Զարմանահրաշ պոզավորը» (1920, հայ.՝ 2003) ողբերգ. ֆարսի:

ԿՐՈՄԼԵԽ (անգլ.՝ cromlech, < բրետոն. crom – կոր, lech – քար), նեոլիթ. և բրոնզեդար. մեգալիթ. կառույց՝ 1 կամ մի քանի շարքով շրջանաձև դասավորված հսկայական քարերից:

ԿՐՈՄՎԵԼ (Cromwell) Թոմաս (մոտ 1485–1540), Անգլիայի լորդ-գլխ. կառավարիչ՝ 1539-ից, Հենրիխ VIII-ի 1-ին խորհրդականը (1532–40): 1533-ից՝ անգլ. ռեֆորմացիայի գաղափարախոսը: Օժանդակել է անգլ. բացարձակապետության (աբսոլյուտիզմ) ուժեղացմանը: Արտաքին քաղ-յան անհաջողություններից հետո մեղադրվել է պետ. դավաճանության մեջ և մահապատժի ենթարկվել:

ԿՐՈՄՎԵԼ Օլիվեր (1599–1658), XVII դ-ի անգլ. հեղ. գործիչ, անկախականների (ինդեփենդենթներ) առաջնորդը: Խորհրդարան. բանակի գլխ. կազմակերպիչներից, որը I (1642–46) և II (1648) քաղաքաց. պատերազմներում հաղթել է թագավոր. բանակին: Բանակի աջակցությամբ խորհրդարանից վտարել է պրեսբիտերներին (1648), համաձայնել է արքայի մահապատժին և հանրապետության հռչակմանը (1649), որտեղ իշխանությունը կենտրոնացած էր Կ-ի կողմնակիցների ձեռքում: 1650-ից՝ լորդ-գեն. (բոլոր տեսակների զորքերի գլխ. հրամ.): Ճնշել է լևելլերների և դիգգերների, Իռլանդիայի և Շոտլանդիայի ազատագր. շարժումները: 1653-ին սահմանել է միանձնյա ռազմ. դիկտատուրա՝ պրոտեկտորատ, դարձել լորդ-պրոտեկտոր:

ԿՐՈՅԱՆ Լորիս Սուշեղի (1928–1984), լրագրող, խմբ.: 1959–69-ին՝ *«Ավանգարդ»*, 1970–84-ին՝ *«Սովետական Հայաստան»* թերթերի գլխ. խմբ., 1978–1984-ին՝ ՀԺՄ նախագահ: Հեղինակ է պատմվածքների, «Ընկերները» (1967) պիեսների ժող-ների:

ԿՐՈՆ (Կրեյն) Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (1909–1983), ռուս. գրող: Հեղինակ է «Խորքային հետախուզում» (1941) պիեսի, Լենինգրադի պաշտպ-յանը նվիրված «Տուն և նավ» (1964), «Անքնություն» (1977) վեպերի, «Հեռավոր նավարկության կապիտանը» (1983) գեղ-վավերագր. վիպակի:

ԿՐՈՆ, աշխարհիկնկալման յուրահատուկ ձև, որի հիմքում Աստծու՝ գերբնականի նկատմամբ հավատն է: Կ-ի պատմ. զարգացման ձևերն են՝ ցեղ., ազգ., պետ. (էթնիկ) և համաշխ. (*բոդդայականություն, քրիստոնեություն, մահմեդականություն*)Կ-ները:

ԿՐՈՆ, 1. Չեխիայի, Սլովակիայի, Շվեդիայի, Նորվեգիայի, Էստոնիայի և այլ երկրների դրամ. միավորը: 2. Ավստրո-Հունգարիայի, ապա՝ Ավստրիայի և Հունգարիայի (մինչև 1924-ը) դրամ. միավորը: 3. Ֆրանսիայի (XIV–XVII դդ.), Անգլիայի (XVI–XVII դդ.) և մի շարք այլ երկրների ոսկեդրամ: 4. Անգլ. արծաթե դրամ (մինչև 1971-ը):

ԿՐՈՆԻ ԳՈՐԾԵՐԻ ԵՎ ԱՋԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ ՀՀ վարչապետին առընթեր, ստեղծվել է 1991-ին Երևանում: Նախապես՝ ՀՀ Կառ-յանն առընթեր կրոնի գործերի պետ. խորհուրդ: Նպաստում է ՀՀ-ում կրոնի ոլորտում իրականացվող պետ. քաղ-յան արդյունավետության բարձրացմանը, կրոն. կազմ-յունների և ազգ. փոքրամասնությունների համակեցության և համապատասխան օրենսդրության մշակմանը:

ԿՐՈՆՇՏԱԴՏ (մինչև 1723-ը՝ Կրոնշլոտ), ք. ՌԴ-ում, Ս. Պետերբուրգի շրջան, նվինգստ Ֆինն. ծոցի Կոտլին կղզում: Բն.՝ ավելի քան 42 հզ.: Հայտնի են «Կրոնշտադտյան ամրոցը», Ա. Ս. Պոպովի աշխատասենյակ-հուշաթանգարանը: Հիմնադրել է Պետրոս I-ը 1703–04-ին՝ որպես ամրոց՝ Ս. Պետերբուրգը ծովից պաշտպանելու համար: Կ-ում կանգնեցված են Պետրոս I-ի, ծովակալ Ս. Օ. Մակարովի հուշարձանները: Ռազմ. փառքի քաղաք է (2009): Կ-ի պատմ. շինությունները նեռրառված են Համաշխարհ. ժառանգության ցանկում:

ԿՐՈՆՈՅԻ ԾՈՎ, Խաղաղ օվկ-ի մաս Կամչատկա թ-կղզու ափերի մոտ, Կրոնոցյան և Շիպունյան թ-կղզիների միջև: Երկ.՝

68,5 *կմ*, լայն. մուտքի մոտ՝ 231 *կմ*, խոր.՝ մինչև 1500 *մ*: Ձմռանը սառչում է:

ԿՐՈՆՇՏԵԴՏ (Կրոնշտեդտ, Cronstedt) Աքսել Ֆրեդրիկ (1722–1765), շվեդ հանքաբան և քիմիկոս: Առաջինն է դասակարգել հանքանյութերը՝ ըստ իրենց քիմ. բաղադրության: Հայտնագործել է (1751) նիկելը:

ԿՐՈՉԵ (Croce) Բենեդետո (1866–1952), իտալացի փիլ., պատմաբան, գրականագետ, քաղ. գործիչ: Ֆաշիստ. ռեժիմի հակառակորդներից: Իմացության մեջ կարևորել է կանխազգացումը (ինտուիցիան)՝ որպես անկրկնելի անհատականը բացահայտող: Հիմնադրել է իտալ. պատմագրության «բարոյաքաղաքական» դպրոցը:

ԿՐՈՊԻՎՆԻՑԿԻՆԵՐ, ռուս նկարիչ–բանաստեղծներ: **Եվգենի Լեոնիդովիչ Կ.** (1893–1979), Լիանոզովյան գր.-գեղ. միավորման (1958–65) ղեկ.: Մշակել է գրոտեսկ. պրիմիտիվիզմի գեղագիտ.-յունը, կանխորոշել է կոնկրետ պոեզիայի կոնցեպտուալ արվ.-ի, մինիմալիզմի, սոց–արտի սկզբնավորումը: Գեղանկարչ. գործերում գերակշռում են բնանկարներն ու նատյուրմորտները: Որդին՝ **Լև Կ.** (1911–1994), նախ ստեղծագործել է աբստրակցիոնիստ., 1980-ական թթ–ի կեսից՝ էքսպրեսիոնիստ. ոճերով: Հեղինակ է բանաստեղծությունների, նաև «Ենթագիտակցության քմայքներ» (1990) օֆորտների շարքի: Անհիմն բռնադատվել է (1946–54):

ԿՐՈՊՈՏԿԻՆ Պյոտր Ալեքսեևիչ (1842–1921), իշխան, ռուս հեղափոխական, անարխիզմի տեսաբան, աշխարհագետ, երկրաբան: 1860-ական թթ–ին մի շարք արշավախմբերի ղեկ. (Արմ. Սիբիր): 1870-ական թթ–ին հիմնավորել է Հս. և Միջին Եվրոպայում լայնորեն տարածված հնագույն մայրցամաք. սառցադաշտերի առկայությունը: Աշխ-ները վերաբերում են էթիկայի, սոցիոլոգիայի, XVIII դ–ի Ֆրանս. հեղ-յան հարցերին:

ԿՐՈՍ (Kross) Յաան (1920–2007), էստոնացի գրող: Էստոնիայի ժող. գրող (1985): Հեղինակ է բանաստեղծությունների ժող-ների, «Երեք համաճարակների միջև» (գիրք 1–4, 1970–80), «Կայսեր խենթը» (1978), «Պրոֆեսոր Սարտենսի հրաժարականը» (1984), «Վիկմանի գիմնազիստները» (1988) կենսագր. վեպերի:

Էստոնիայի Կ. Սմուուլայի անվ. գր. (1971, 1973), Պետ. (1977), Բալթյան ասամբլեայի (1999) և այլ մրց-ներ:

ԿՐՈՍ (անգլ.՝ cross – կտրել–անցնել), 1. (մարզ.) մարզ. վազք, դահուկասահք, երթ հեծանվով, մոտոցիկլով, ավտոմոբիլով՝ բնական կտրտված տեղանքում: 2. (Տեխ.) հեռախոսա- կամ հեռագրակայանի շենքի սրահ, որտեղ կենտրոնացված են էլ. պաշտպ-յան ներանցիչները, սարքավորումները (պարպիչներ) և բոլոր էլեկտրագծերի ու կապի մալուխների ապահովիչները:

ԿՐՈՍԲՐԻԴԻՆԳ (< անգլ. cross – *խաչաձևում* և breeding – բաժանում), գենետիկորեն չհամընկնող սորտերի, գծերի և ցեղերի խաչասերումը. աուտբրիդինգի տարատեսակ է: Հանգեցնում է 1-ին սերնդի ստացման՝ հետերոզիսի արդյունքում:

ԿՐՈՍԻՆԳՈՎԵՐ (անգլ.՝ crossing–over – տրամախաչում), հոմոլոգ (զույգ) քրոմոսոմների հատվածների փոխադարձ փոխանակությունը *կոնյուգացման* (մեյոզ) ընթացքում, որը հանգեցնում է նրանցում տեղակայված գենների վերաբաշխման (rekombինացիա): Տեղի է ունենում բջջի կիսման կենսընթացում: Ժառանգ. փոփոխականության մեխանիզմներից է: Փորձառն. գենետիկայում օգտագործվում է քրոսոմների գենետիկ. քարտեզներ կազմելիս:

ԿՊԵՅԱՆ Թաթուլ Ժորժիկի (1965–1991), Արցախյան ազատագր. շարժման մասնակից: Հայաստանի Ազգ. հերոս (հետմահու, 1996): 1987–ից անդամակցել է ԼՂԻՄ–ի «Միացում» հաս–քաղ. կազմյանը: Եղել է Գետաշեն–Մարտունաշեն ենթաշրջանի ինքնապաշտպ–յան հրամ–ը:

ԿՐՏՈՒՄ, տես *Կապտրացիա*:

ԿՐՈՒԳ Կառլ Ադոլֆովիչ (1873–1952), ռուս. էլեկտրատեխնիկ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1933): ԳՈԷԼՌՈ–ի պլանի կազմման մասնակիցներից: Հեղինակ է «Էլեկտրատեխնիկայի հիմունքներ» (հ. 1–2, 6–րդ հրտ., 1946) հիմնարար դասագրքի:

ԿՐՈՒԳԵՐ Յակով Մարկովիչ (1869–1940), բելառուս նկարիչ: ԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1939): Հեղինակ է դիմանկարների («Յանկա Կուպալա», 1927, ևն), ժանրային նկարների («Ջարդ», մոտ 1905, ևն):

ԿՐՈՒԶԵՆՇՏԵՌՆ (Krusenstern) Իվան Ֆեոդորովիչ (1770–1846), գերմանացի ծովագնաց, ծովակալ (1841): Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. (1803), պատվ. (1806) անդամ: 1803–06–ին՝ «Նադեժդա» և «Նևա» նավերից կազմված ռուս. առաջին շուրջերկրյա արշավախմբի ղեկ.: «Հարավային ծովի ատլաս»–ի (հ. 1–2, 1823–26) հեղինակ: Ռուս. աշխարհագր. ընկ–յան հիմնադիրներից:

ԿՐՈՒԶԵՆՇՏԵՌՆԻ ՆԵՂՈՒՅ, Կուրիլ. կղզիների հս–ում՝ Լովուշկի և Ռայկոկե կղզիների միջև: Միացնում է Օխոտի ծովը Խաղաղ օվկ–ին: Լայն.՝ 55 *կմ*, խոր.՝ մինչև 1764 *մ*: Կոչվել է Ի. Ֆ. *Կրուզենշտեռնի* անունով:

ԿՐՈՒԻՖ, Կրույֆ (Cruyff), Յոհան (1947–2016), նիդեռլանդացի ֆուտբոլիստ և մարզիչ: Նիդեռլանդների չեմպիոն (1966–68, 1972–73), Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստ (1971, 1973, 1974), Եվրոպ. չեմպիոնների (1971, 1972, 1973) և Միջմայրցամաք. (1972) գավաթների գավաթակիր:

ԿՐՈՒՄԲԱԽԵՐ (Krumbacher) Կառլ (1856–1909), գերմանացի բանասեր, պատմաբան, բյուզանդագետ: Գերմ. ակադեմ. բյուզանդագիտ–յան հիմնադիրը: 1892–ին հիմնադրել է 1-ին բյուզանդագիտ. ամսագիրը՝ «Byzandische Zeitschrift»: Նրա «Բյուզանդական գրականության պատմությունը» բյուզ. գր. հուշարձանների տեղեկատու է:

ԿՐՈՒՇԵԼՆԻՑԿԻ Մարիան Միխայլովիչ (1897–1963), ուկրաինացի դերասան, ռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1944): 1920–ից մասնակցել է ուկր. թատրոնների հիմնադրմանը Վիննիցայում, Խարկովում: 1952–ից՝ Կիևի Ի. Ֆրանկոյի անվ. թատրոնի ռեժ. (1954–ից՝ գլխ. ռեժ.): ԽՍՀՄ Պետ. մրց. (1947, 1948):

ԿՐՈՒՇԵՎՄԿԻ (Kruszevski) Նիկոլայ Վյաչեսլավովիչ (1851–1887), լեհ լեզվաբան, հնդեվրոպաբան: Հեղինակ է ընդհ. և հնդեվրոպ. լեզվաբ–յանը (լեզվի զարգացման օրենքներին ու կարգերին), կառուցվածք. լեզվաբ–յանը, լեզուների հնչյունաբանությանը վերաբերող աշխ–ների: Ի. Բոդուեն դը Կուրտենեի հետ ձեռնարկել է հնչակարգության հիմն. դրույթների մշակումը: Հեղինակ է «Ակնարկ լեզվի մասին գիտության» (1883) աշխ–յան:

ԿՐՈՒՇԻՆՄԿԻ Լեոնիդ Վիկտորովիչ (1911–1984), ռուս կենսաբան: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1974): Առաջարկել է կենդանու նյարդ. համակարգի գրգռելիության մակարդակը՝ որպես նրա վարքի մոդիֆիկարարի մասին վարկած: Լենինյան մրց. (1988, հետմահու):

ԿՐՈՒՉԵՆՅՈՒԿ (Cruceniuc) Պյոտր (1917–1988), մոլդավ գրող: Մոլդովայի ժող. գրող (1982): 1957–64–ին՝ «Մշակույթ» (մոլդ.) շաբաթաթերթի խմբ.: Հեղինակ է «Ռազմամակատային բանաստեղծություններ» (1942), «Կրեմլի պարիսպների մոտ» (1952), «Անմոռացություն» (1972), «Մարդկայնություն» (1978), «Խոսք և հաց» (1982) բանաստեղծությունների ժող-ների, նաև վիպակների, հրապարակախոս. գործերի:

ԿՐՈՒՉԿՈՎՍԿԻ (Kruczkowski) Լեոն (1900–1962), լեհ գրող: Հեղինակ է «Կորդիանը և անպատկառը» (1932), «Սիրամարգի փետուրներ» (1935), «Թակարդ» (1937) վեպերի, «Գերմանացիներ» (1949) հակաֆաշիստ. թեմաներով, «Նահանգապետի մահը» (1961) և սոցիալ–փիլ. այլ պիեսների: ԼԺՀ Պետ. (1950, 1955), Լենինի միջազգ. (1953) մրց-ներ:

ԿՐՈՒՊԻՆ Վլադիմիր Նիկոլաևիչ (ծ. 1941), ռուս գրող: 1989–92–ին՝ «Մոսկվա» (ռուս.), 1998–2003–ին՝ «Բլագոդատնի օգոն» (ռուս.) ամսագրերի գլխ. խմբ.: Հեղինակ է «Անմահական ջուր» (1980, հայ.՝ 1982) պատմվածք–այլաբանության, «Մնաս բարով, Ռուսաստան, կհանդիպենք դրախտում» (1991), «Եկեղեցական թափոր» (1994) և այլ վիպակների: Հայ. է հրատարակվել նաև «Անտեսանելի գանձեր» (1961) գործը:

ԿՐՈՒՊՍԿԱՅԱ, Նադեժդա Կոնստանտինովնա (1869–1939), խորհրդ. պետ. և քաղ. գործիչ: ԽՍՀՄ ԳԱ պատվ. անդամ (1931): Վ. Ի. *Լենինի* կինը: 1920–ից՝ լուսժողկոմատին կից գլխքաղլուսի նախագահ: 1924–ից՝ ՀամԿ(բ)Կ ԿՎՀ–ի, 1927–ից՝ ՀամԿ(բ)Կ ԿԿ անդամ: 1929–ից՝ ՌԽՖՍՀ լուսժողկոմի տեղակալ: Աշխ-ները վերաբերում են մանկավարժությանը և ԽՄԿԿ պատմությանը:

ԿՐՈՒՍ (Cruz) Խուանա Ինես դե լա (Ասբախե ի Ռամիրես դե Սանտիլյանա, 1651–1695), մեքսիկացի բանաստեղծուհի, միանձնուհի: Հեղինակ է սիրային և փիլ. քնար. գործերի («Կաստալական առատություն», հ. 1–3, 1689–1700, ժող.), առեղծված. տարրերով «Առաջին երազատեսությունը» պոեմի, «Բանաստեղծուհու պատասխանը արժանապատ քույր Ֆիլոտեային» (1691) ինքնակենսագր. երկի:

ԿՐՈՒՍ Ի ՍՈՋԱ (Cruz e Sousa) Ժուան դա (1861–1898), բրազիլացի բանաստեղծ: «Վահաններ» (1893), «Լուսատուներ» (1900), «Վերջին սոնետները» (1905) ժող-ները, մեծ ազդեցություն են թողել բրազիլ. ավանգարդիստ. պոեզիայի ձևավորման վրա:

ԿՐՈՒՍՏԵՆ (Krusten) Էռնի (1900–1984), էստոնացի գրող: Էստոնիայի ժող. գրող (1972): Հեղինակ է «Գիրք Պեկսինեի մասին» (1946), «Երիտասարդների սրտերը» (գիրք 1, 2, 1954, 1956), «Ինչպես կաթիլը ծովում» (1962) վեպերի, «Խենթ ծիծեռնակ» (1981) պատմվածքների, հուշագրությունների ժող-ների: Հայ. է հրատարակվել «Գարնան որոնումներ» (1964) պատմվածքների ժող-ը:

ԿՐՈՒՏՈՎ Վլադիմիր Եվգենևիչ (ծ. 1960), ռուս մարզիկ (տափօղակով հոկեյ): ԽՍՀՄ ս. վ. վ. (1981): Օլիմպ. (1984, 1988), աշխարհի (1981–83, 1989), Եվրոպայի

(1981–83, 1985–87, 1989) չեմպիոն, Կանադայի գավաթի գավաթակիր (1981):

ԿՐՈՒՍՈՒՍ (Kruus) Հանս (1891–1976), էստոնացի պատմաբան: Էստ. ԽՍՀ ԳԱ ակադ. (1946, նախագահ՝ 1946–50-ին, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1946-ից): Աշխ-ները վերաբերում են Մերձբալթիկայի XIII–XX դդ-ի պատմությանը:

ԿՅԱԳՈՒՆԴ, հանտել (գերմ.՝ Hantel), կարճ բռնակով իրար միացած 2 մետաղագնդի տեսքով ձեռքի մարզագործիք:

ԿՅԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, ձևաբան. դասակարգման մեջ լեզուների տիպ, որոնցում բառի քերական. ձևերը կազմվում են մեկական քերական. կարգ արտահայտող առանձին մասնիկներով: Կցական է նաև ժամանակակից հայոց լեզուն՝ թեքականության որոշ տարրերով:

ԿՅՈՐԴ, ատաշե (ֆրանս.՝ attache), դիվանագիտ. աստիճան, կրտսեր դիվանագիտ. պաշտոն: Դիվանագիտ. ներկայացուցչություններում լինում են ռազմ., առևտր., մշակութ., մամուլի, հատուկ և այլ հարցերով Կ-ներ:

ԿՅՈՐԴԻԶ, 1. լիսեռների, խողովակների, պողպատե ճոպանների, մալուխների միացման (մշտ. կամ ժամանակավոր) սարք: Տարբերում են միացման (կոշտ և շարժ.), կցման (կառավարման համակարգի միջոցով ընթացքի ժամանակ դետալները միացնող կամ անջատող), ապահովիչային և վազանցային (պտույտը միայն մի ուղղությամբ հաղորդող) Կ-ներ: 2. Փոխադր. մեքենաների մեխանիզմի լիսեռները (օր.՝ շարժիչի և փոխադրատուփի) միացնելու և անջատելու սարք:

ԿՅՈՒԽՐԴ, հայ հոգևոր երգի հնագույն տեսակ: Առաջին Կ-ները (IV–V դդ.) հիմնականում 3 տնից բաղկացած փոքր երգեր էին (Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև), ապա դարձել են առավել ծավալուն: XII դ-ից կոչվել են *շարական*:

ԿՈՒԱԼԱ ԼՈՒՄՊՈՒՐ (Kuala Lumpur), Մալայզիայի մայրաքաղաքը, կարևոր տնտ. կենտրոն Մալակկայի թ-կղզում: Ունի դաշն. տարածքի կարգավիճակ: Բն.՝ 1,47 մլն (2010, արվարձաններով՝ 8 մլն): Տրանսպորտ. հանգույց է: Ունի օդանավակայան: Հվ. մասում գործում է Հվ–արլ. Ասիայում խոշորագույն տեխնոպոլիսը: Հիմնադրվել է 1857-ին:

ԿՈՒԱՅԻԴ (ալ Կուայիդ) Մուհամմեդ Յուսուֆ (ծ. 1944), եգիպտացի արձակագիր: Փորձել է կիրառել ժանրային և պատմող. ձևերը՝ «գիտակցության հոսքի» տեխնիկան («Սուգ», 1969, վեպ), վեպ վեպի մեջ եղանակը («Պերճախոս եգիպտացու գանգատները», 1981–85, եռերգություն) ևն: Հեղինակ է նաև «Պատերազմ Եգիպտոսի հողի վրա» (1981) վեպի, պատմվածքների և այլ գործերի: Պետ. մրց. (2008):

ԿՈՒԱՀՈՒՏԵՄՈԿ (Cuauhtemoc, 1494–1502-ի միջև–1525), ացտեկների գերագույն կառավարիչ՝ 1520–21-ին, իսպանացիների դեմ զինված պայքարի ղեկ.: Աչքի է ընկել Տենոչտիտլանի (այժմ՝ Մեխիկո) պաշարման ժամանակ: Գերի է ընկել և մահապատժի ենթարկվել:

ԿՈՒԲԱ, (Cuba), պետություն Լատ. Ամերիկայում: Տարածքը՝ 111 հզ. *կմ*², բն.՝ 11 մլն (2013): Մայրաքաղաքը՝ *Հավանա*: Պետ. լեզուն՝ իսպ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը Պետ. խորհրդի նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Բաժանված է 16 վարչ. դեպարտամենտների: Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է: Անդամակցում է ՄԱԿ-ին, Լատ. Ամերիկայի և Կարիբյան ծովի ավազանի երկրների ընկերակցությանը, Համաշխ. մաքս. կազմյանը ևն: Զարգացող երկիր է. տնտ-յան հիմքը արտ. գրոսաշրջությունն է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով մոտ 9,9 հզ. ԱՄՆ դոլար է (2013): Արտահանում է շաքար, նիկել, սուրճ, դեղեր ևն, ներմուծում մեքենաներ ու սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ կուբայական պեսո:

Կղզին հայտնաբերել է Ք. Կոլումբոսը 1492-ին: XVI դ-ից իսպ. գաղութ էր, այդ ընթացքում տեղացի հնդկացիներին ոչնչացրել են, աշխատուժ-ստրուկներ են բերել Աֆրիկայից: Տևական պայքարից և ամերիկա-իսպ. պատերազմից (1892) հետո Կ. հռչակել է իր անկախությունը (1902): Բայց իրականում պահպանվել է ամերիկ. գաղութատիրությունը, իշխանության գլուխ է անցել բռնապետ Ֆ. Բատիստան, որը հեղ. ուժերի (Ֆ. *Կաստրոյի* գլխավորությամբ) ճնշմամբ 1959-ին փախել է երկրից: Կ. վերջնականապես ազատագրվել և կողմնորոշվել է դեպի ԽՍՀՄ, որի փլուզումից հետո երկրում կատարվել են բարեփոխումներ և տնտ-յան ազատականացում: 2002-ին հանրաքվեով պահպանվել է երկրում ստեղծված քաղ. և տնտ. համակարգը՝ Ռաուլ Կաստրո Ռասի գլխավորությամբ: 2008-ին ընդունվել են քաղ. և տնտ. կյանքի ազատականացման մի շարք միջոցառումներ:

ԿՈՒԲԱԹԼՈՒ (այժմ՝ Որոտան), ազատագրված (1993-ի օգոստ.) ք. ԼՂՀ Քաշաթաղի շրջանում: Մինչև խորհրդ. կարգերի հաստատումը՝ Հայաստանի, 1923–93-ին Ադրբեջանի կազմում էր: Բն.՝ 73 մարդ (2005):

ԿՈՒԲԱՅԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ, հիմնադրվել է 1861-ին Հավանայում: Ներկա կարգավիճակով՝ 1962-ից: 2016-ին ուներ 23 ԳՀԻ, ավելի քան 250 անդամ:

ԿՈՒԲԱՆ, գետ ՌԴ Ստավրոպոլի և Կրասնոդարի երկրամասերում: Ձևավորվում է Էլբրուսի լանջերից սկիզբ առնող Ուլուկամ և Ուչկուլան գետերի միախառնումից: Թափվում է Ազովի ծով: Երկ.՝ 870 *կմ*, ավազանը՝ 57 900 *կմ*², ջրի միջին ծախսը՝ 425 *մ*³/*վ* (Կրասնոդարի մոտ): Նավարկելի է գետաբերանից մինչև Կրասնոդար ք-ը:

ԿՈՒԲԱՆ–ՄԵՐՁԱԶՈՎՅԱՆ ՅԱԾՐԱՎԱՅՐ, *Մերձկուբանյան ցածրավայր*, հարթավայր Արմ. Նախակովկասում: Տարածվում է Մեծ Կովկասի, Ստավրոպոլյան բարձրության, Ազովի ծովի և Դոն ու Սանիչ գետերի ստորին հոսանքների միջև: Բարձր.՝ մինչև 150 *մ*: Հս. Կովկասի կարևոր հացահատիկ. կենտրոնն է:

ԿՈՒԲԱՆՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐ, Ռուսաստանում քաղաքաց. պատերազմի (1917–22) ընթացքում *Կամավորական բանակի* 1918-ի մարտ. գործողությունները Կուբանում՝ խորհրդ. իշխանության դեմ պայքարի հենք ստեղծելու նպատակով: 1-ին Կ. ա. տեղի է ունեցել 1918-ի փետր–մայիսին: Փետր. վերջին Կամավոր. բանակը (մոտ 3 հզ. մարդ, 8 հրանոթ) հետևազորի գեն. Լ. Գ. *Կոռնիլովի* հրամանատարությամբ թողել է Դոնի Ռոստովը և ապրիլի սկզբին փորձել է գրավել Եկատերինոդարը (այժմ՝ Կրասնոդար): Մարտում Կոռնիլովը սպանվել է: Նոր հրամ. գեն-լեյտ. Ա. Ի. *Դենիկինը* մեծ կորուստների (մոտ 2 հզ. մարդ) և ռազմամթերքի անբավարարության պատճառով բանակը հետ է քաշել հս: 2-րդ Կ. ա.՝ 1918-ի հունիս–նոյեմբ-ին: Կամավոր. բանակը օգոստ. 15-ին գրավել է Եկատերինոդարը, օգոստ. 26-ին՝ Նովոռոսիյսկը: Աշնանը Կամավոր. բանակը գրավել է գրեթե ողջ Հս. Կովկասը, դրանով նախադրյալներ են ստեղծվել Կենտր. Ռուսաստանի վրա հարձակվելու համար:

ԿՈՒԲԱՍՈՎ Վալերի Նիկոլաևիչ (1935–2014), ռուս տիեզերագնաց օդաչու (1969): Տեխ. գիտ. թեկնածու (1968): ԽՄ հերոս (1969, 1975): ՀԺՀ հերոս (1980): Թռել է «Սոյուզ–6» (1969-ի հոկտ.), «Սոյուզ–19» տիեզերանավերով՝ ըստ «Ապոլոն» և «Սոյուզ» փորձարար. թռիչք. ծրագրի (1975-ի հուլիս), «Սոյուզ–35,–36» տիեզերանավերով և «Սոյուզ–6» ուղեծրակայանով (1980-ի մայիս–հունիս): Թռիչքի ընդհ. տևողությունը 18 օր 18 ժ:

ԿՈՒԲԱՅԻՆԵՐ, ժողղ, Կուբայի Հանրապետության հիմն. բնակչությունը (11,2 մլն, 2012): Ապրում են նաև ԱՄՆ-ում (1,5 մլն, 2008), Բրազիլիայում (761 հզ., 2005), Իսպանիայում (20 հզ., 2008): Լեզուն՝ իսպ. (տեղ. առանձնահատկություններով): Կաթոլիկ են, բողոքական և աֆրիկաքրիստ. սինկրետիկ պաշտամունքների հետևորդներ:

ԿՈՒԲԵԼԻԿ (Kubelik), չեխ երաժիշտներ: **Յան Կ.** (1880–1940), ջութակահար, կոմպոզիտոր: Հեղինակ է 6 կոնցերտի՝ ջութակի և նվագախմբի համար: Որդին՝ **Ռաֆայել Կ.** (1914–1996), դիրիժոր, կոմպոզիտոր: 1955–58-ին՝ Լոնդոնի «Քովենթ Գարդեն» թատրոնի ղեկ., 1961-ից՝ Բավար. ռադիոյի սիմֆ. նվագախմբի (Մյունխեն) գլխ. դիրիժոր, 1973-ից՝ Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերայի» երաժշտ. ղեկ.: Հեղինակ է օպերաների, 3 ռեքվիեմի, մեսսայի՝ ա կապելլա երգչախմբի համար:

ԿՈՒԲԵԼԱ, հարստության աստվածը հինհնդ. դից-յան մեջ:

ԿՈՒԲԵՐՏԱՎԻՉՅՈՒՍ (Kubertavičius) Պյատրաս (1897–1964), լիտվացի դերասան, ռեժ.: Լիտվ. ԽՍՀ ժող. արտիստ (1959): Լիտվ. պրոֆեսիոնալ թատրոնի հիմնադիրներից: 1920–63-ին (ընդհատումներով)՝ Կաունասի դրամատիկ. թատրոնի դերասան (Չերուտիկին՝ Ա. Պ. Չեխովի «Երեք քույր», Գլոստեր՝ Վ. Շեքսպիրի «Լիր արքա», ևն):

ԿՈՒԲԵՐՏԵՆ (Coubertin) Պիեռ դը (1863–1937), բարոն, ֆրանսիացի հաս. գործիչ, մանկավարժ, ժամանակակից օլիմպ. շարժման հիմնադիրը: 1896–1916 և 1919–25-ին (1925–37-ին՝ պատվ.)՝ ՄՕԿ նախագահ:

ԿՈՒԲԵՑԿԻ Լեոնիդ Ալեքսանդրովիչ (1906–1959), ռուս. ֆիզիկոս: Ստեղծել է լուսաէլեկտրոն. բազմապատկիչը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1948):

ԿՈՒԲԻԶՄ (ֆրանս.՝ cubisme, < cube – խորանարդ), ավանգարդիստ. հոսանք XX դ-ի 1-ին քառորդի կերպարվ-ում: Ձևավորվել է Ֆրանսիայում (Պ. Պիկասո, Ժ. Բրաք, Խ. Գրիս) և այլ երկրներում: Առավելապես հենվելով Պ. *Սեզանի* գեղանկարչության համադր-ամբողջ. համակարգի և աֆրիկ. քանդ-յան ավանդույթների վրա՝ Կ-ի ներկայացուցիչները հարթության վրա ծավալաձևերի կառուցման համար օգտագործել են պարզ երկրչփ. ձևեր (խորանարդ, կոն,

գլան)։ «Համադրական» Կ. (1912–15) ձգտել է ներդաշնակ դեկորատիվ գունագեղ կոմպոզիցիաների։

ԿՈՒԲԻՆ (Kubin) Ալֆրեդ (1877–1959), ավստրիացի գրաֆիկ, գեղանկարիչ, գրող։ Էքսպրեսիոնիզմի ներկայացուցիչ, կրել է Ֆ. Գոյայի, Ջ. Էնսորի ազդեցությունը։ Գրաֆիկ. գործերից են «Սարդ» (մոտ 1900–01), «Մահվան պարը» (շարք, 1915) ևն։ Պատկերազարդել է Է. Պոյի, Ֆ. Մ. Դոստոևսկու, Է. Տ. Ա. Հոֆմանի, Հ. ֆոն Հոֆմանստալի, նաև սեփ. երկերը։ Հեղինակ է «Մյուս կողմը» գրոտեսկ-ֆանտաստիկ վեպի (1909)։

ԿՈՒԲԻՉԵՔ ԴԻ ՕԼԻՎԵՅՐԱ (Kubitschek de Oliveira) Ժուսելինու (1902–76), Բրազիլիայի նախագահ՝ 1956–61-ին։ 1964-ի ռազմ. հեղաշրջումից հետո զրկվել է քաղ. իրավունքներից։

ԿՈՒԲԼԱՆՈՎՄԿԻ Յուրի Միխայլովիչ (ծ. 1947), ռուս բանաստեղծ։ 1982–89-ին եղել է տարագրության մեջ։ Հեղինակ է «Վերջին արևի հետ» (1983), «Օտարականը» (1993), «Քանակ» (1994), «Անվանականչ» (2012), «Անուղղելի ժամանակներ» (2015) և բանաստեղծությունների այլ ժող-ների։

ԿՈՒԳԱՉ Յուրի Պետրովիչ (1917–2013), ռուս. գեղանկարիչ։ ԽՍՀՄ ժող. նկարիչ (1977)։ ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի ակադ. (1975)։ Ստեղծել է ժամանակակից ռուս. գյուղ. կյանքը ներկայացնող («Շաբաթ օր», 1964, ևն) պատկերներ։ ԽՍՀՄ (1950), ՌԽՖՍՀ Ի. Ե. Ռեպինի անվ. (1969) Պետ. մրց-ներ։

ԿՈՒԳԵԼ Ալեքսանդր Ռաֆայիլովիչ (1864–1928), հրեա գր. և թատեր. քննադատ, դրամատուրգ, ռեժ.։ 1897–1918-ին՝ «Թատրոն և արվեստ» հանդեսի խմբ.։ «Ծուռ հայելի» թատրոնի հիմնադիր (1908) և ղեկ.։

ԿՈՒԳՈՒԼՏԻՆՈՎ Դավիդ Նիկիտիչ (1922–2006), կալմիկ բանաստեղծ։ Կալմիկիայի ժող. բանաստեղծ (1969)։ Սոց. աշխ. հերոս (1990)։ 1945–56-ին բռնադատվել է, եղել Գուլագում։ Հեղինակ է «Մոաբիտի կալանավորը» (1958), «Բանականության խռովություն» (1965–71) պոեմների, «Ես քո հասակակիցն եմ» (1966), «Ապրիլի կանչը» (1975), «Երկրի հիշողությունը» (1979), «Կյանք և խորհրդածություն» (1983) փիլ. ժող-ների։ ՌԽՖՍՀ (1967), ԽՍՀՄ Պետ. (1976) մրց-ներ։

ԿՈՒԴԱՄԱ (ծ. թ. անհտ–մոտ 930–940-ական թթ.), արաբ բանասեր, աշխարհագետ։ «Գիրք խարաջի և գրագրության արվեստի» (մոտ 928/929) աշխ-յան մեջ կարևոր տեղեկություններ կան Հայաստանի և հարևան երկրների ճանապարհների, հարկերի նևի վերաբերյալ։

ԿՈՒԴԱՇ (Կուդաշև) Սայֆի Ֆաթահովիչ (1894–1993), բաշկիր բանաստեղծ։ Բաշկիրիայի ժող. բանաստեղծ (1964)։ Գրել է նաև թաթար. և ռուս.։ Հեղինակ է «Քուշքանեն» (1936–59) չափածո վեպի, «Սեր և ատելություն» (1942), «Իմ պարտեզում» (1964), «Բանաստեղծություններ» (1974) ժող-ների, «Գարնանն ընդառաջ» (1954) պատմ-կենսագր. վիպակի։

ԿՈՒԴԻՐԿԱ (Kudirka) Վինցաս (1858–1899), լիտվացի գրող, հաս. գործիչ։ Հեղինակ է «Ազատ ժամեր» (1899) բանաստեղծությունների ժող-ի, «Գայլեր» (1898) և այլ երգիծ. պատմվածքների, նաև «Ազգային երգ»-ի (1899, 1919–40-ին և 1988-ից՝ Լիտվայի օրհներգը) խոսքերի ու երաժշտության։

ԿՈՒԴԼԻԽ (Kudlich) Հանս (1823–1917), ավստրիացի քաղաքագետ, Ավստրիայում և Գերմանիայում 1848–49-ի հեղ-յունների մասնակից, ճորտատիրության վերացման օրենքի (սեպտ. 7) նախաձեռնող։ 1849-ին մասնակցել է Պֆալցի ապստամբությանը։ Ավստր. դատարանը նրան դատապարտել է մահապատժի, Կ. փախել է արտերկիր։

ԿՈՒԴՐՅԱ Իվան Դանիլովիչ (1912–1942), խորհրդ. հետախույզ, կապիտան։ ԽՄ հերոս (1965, հետմահու)։ 1938-ից աշխատել է ՊՄԿ-ում։ ՀՄՊ-ի ժամանակ ղեկավարել է Կիևի հետախուզադիվերսիոն խմբավորումը։ Մահապատժի են ենթարկել գերմանացիները։

ԿՈՒԴՐՅԱՎՄԿԻ Դմիտրի Նիկոլաևիչ (1867–1920), ռուս լեզվաբան, արևելագետ։ Հեղինակ է սանսկրիտին, դաս. լեզուներին, ռուս-ին վերաբերող աշխ-ների, «Լեզվաբանության ներածություն» (1912) դասագրքի, «Ինչպես են մարդիկ ապրել հին ժամանակներում» (8-րդ հրտ.՝ 1894–1925) գրքի։ Հետազոտել է հինհնդ. մշակույթի պատմությունը։

ԿՈՒԴՐՅԱՎՑԵՎ (Կուդրյավցև-Պլատոնով) Վիկտոր Դմիտրևիչ (1828–1891), ռուս փիլ. և աստվածաբան։ Ռուսաստանում թեիստ. փիլ-յան նշանավոր համակարգողներից (տրանսցենդենտ. մոնիզմի հայեցակարգ), որը հնարավոր է համարել ոգու և մատերիայի հաշտեցումը «3-րդ սկզբունքի»՝ Աստծու մեջ։ Ֆ. Ա. *Գոլուբինակու* աշակերտն ու հետևորդը։

ԿՈՒԴՐՅԱՎՑԵՎ Վլադիմիր Նիկոլաևիչ (1923–2007), ռուս իրավաբան։ ՌԳԱ ակադ. (1984, փոխնախագահ՝ 1988–2001-ին)։ Աշխ-ները վերաբերում են քրեագիտության, իրավունքի սոցիոլոգիայի և տեսության հարցերին։ ԽՍՀՄ Պետ. մրց. (1984)։

ԿՈՒԴՈՒՌ, այծքաղների 2 տեսակ (մեծ և փոքր)։ Մարմնի երկ.՝ 245 *սմ*։ Ապրում է Հվ. և Հվ-արլ. Աֆրիկայում։ Որսակենդանի է։ Բազմացնում են ֆերմաներում՝ ընտանի կենդանիների հետ։

ԿՈՒԵՐԱ, ուրարտ. աստվածություն։ Եղել է Ադիա դիցուհու զույգը։ Կ-ի պաշտամունքը տարածվել է Վանա լճի հս-արլ-ում, որտեղ Իշպուինի և Մենուա թագավորները հիմնադրել են Կ-ին նվիրված սրբատեղիներ։ Հիշատակվել է նաև Կ-ին նվիրված 2 քաղաք։

ԿՈՒԶ, մարդու ողնաշարի կրծքային հատվածի և կրծքավանդակի ձևախախտում։ Դրսևորվում է խիստ արտահայտված *կիֆոզով*։ Պատճառներն են կոտրվածքները, ողնաշարի տուբերկուլոզը։

ԿՈՒԶԵՆ (Cousin) Վիկտոր (1792–1867), ֆրանսիացի փիլ.։ Փիլ-յան խնդիրն է համարել նախորդ համակարգերի ճշմարտությունների ընտրությունը՝ հիմնված «ողջախոհության» վրա։ Ֆրանսիայում քարոզել է Ի. Կանտի, Ֆ. Շելլինգի, Գ. Հեգելի փիլ-ը։

ԿՈՒԶԻՆ Ալեքսանդր Միխայլովիչ (1906–1999), ռուս. կենսաֆիզիկոս, ռադիոկենսաբան։ ՌԳԱ թղթ. անդամ (1960)։ Աշխ-ները վերաբերում են իոնացնող ճառագայթների կենսաքիմ. և մոլ. կենսբ. ազդեցության հիմունքներին։ Հեղինակ է կենսբ-յան մեջ կառուցվածքամետաբոլիկ տեսության։ Պագուոշյան շարժման հիմնադիրներից է։ ԽՍՀՄ Պետ. մրց. (1987)։

ԿՈՒԶԻՆ Վլադիմիր Սեմյոնովիչ (1930–2007), ռուս. մարզիկ (դահուկավազք)։ ԽՍՀՄ ս. վ. վ. (1954) և վ. մ. (1970)։ Կենսբ. գիտ. թեկնածու (1972)։ Օլիմպ. խաղերի (1956), աշխարհի (1954), ԽՍՀՄ (1953, 1956) դահուկավազքի չեմպիոն։

ԿՈՒԶԻՆԱ Յուլիա Վալերևնա (ծ. 1976), ռուս. մարզուհի (սամբո, ձյուդո)։ ՌԴ ս. վ. վ. (2001)։ Աշխարհի երկակի, Եվրոպայի եռակի, Ռուսաստանի յոթակի չեմպիոն, սամբոյի աշխարհի գավաթի երկակի հաղթող։ Ձյուդոյի Եվրոպայի առաջնության (7) բրոնզե մեդալակիր։

ԿՈՒԶԿԻՆ Վիկտոր Գրիգորևիչ (1940–2008), ռուս մարզիկ (տափօղակով հոկեյ)։ ԽՍՀՄ ս. վ. վ. (1967)։ Օլիմպ. (1964, 1968, 1972), աշխարհի (1963–69, 1971), Եվրոպայի (1963–69), ԽՍՀՄ (1959–75) չեմպիոն։

ԿՈՒԶՄԻՆ Միխայիլ Ալեքսանդրովիչ (1872–1936), ռուս գրող, կոմպոզիտոր, երաժշտ. քննադատ։ Հեղինակ է «Ալեքսանդրյան երգեր» (1921), «Իշխան ձուկը կոտրում է սառույցը» (1929) բանաստեղծությունների ժող-ների, «Կոմս Կալիոստրո Իոսիֆ Բալզամոյի հրաշալի կյանքը» (1919) վիպակի, «Խաղաղասեր պահակը» (1916) վեպի։ Գրել է երգեր (հիմնականում՝ սեփ. բանաստեղծությունների խոսքերով), երաժշտություն՝ դրամատիկ. բեմադրությունների համար։

ԿՈՒԶՄԻՆ Միխայիլ Իվանովիչ (1938), ռուս երկրաբան և երկրաքիմիկոս։ ՌԳԱ ակադ. (2003, թղթ. անդամ՝ 1991-ից), 1988–2012-ին եղել է ՌԳԱ ՍԲ Երկրաքիմիայի ինստ-ի տնօրեն։ Աշխ-ները վերաբերում են հրային ապարների երկրաքիմիային և նրա ու երկրադինամիկայի կապերին։ ՌԴ Պետ. մրց. (1997)։

ԿՈՒԶՄԻՆ Նիկոլայ Վասիլևիչ (1890–1987), ռուս գրաֆիկ։ ՌԽՖՍՀ ժող. նկարիչ (1972)։ ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի թղթ. անդամ (1967)։ Տ. Ա. *Մավրինայի* ամուսինը։ Ազատ ձևերով գրաֆիկ. պատկերազարդումները (հաճախ՝ ջրանկարներով) գր. երկերին հաղորդում են հուզ. կառուցվածք (Ա. Ս. Պուշկինի «Եվգենի Օնեգին», 1928–32, Ն. Ս. Լեսկովի «Ձախլիկը», 1961, ևն)։

ԿՈՒԶՄԻՆԱ-ԿԱՐԱՎԱԵՎԱ (Պիլենկո) Ելիզավետա Յուրևնա (Մայր Մարիա, 1891–1945), ռուս բանաստեղծուհի, միանձնուհի (1931-ից)։ 1919-ից՝ վտարանդի։ Դիմադրության շարժման մասնակից։ Հեղինակ է «Սկյութական խեցիներ» (1912), «Ռուֆ» (1916) ժող-ների, «Ռուսական դաշտավայր» (1924) կենսագր. վիպակի։ Զոհվել է ֆաշիստ. համակենտրոնացման ճամբարում։ Նրա մասին է «Մայր Մարիա» (1982) կինոնկարը։ 2004-ին սրբադասվել է։

ԿՈՒԶՄԻՆ-ԿԱՐԱՎԱԵՎ Վլադիմիր Դմիտրևիչ (1859–1927), ռուս քաղ. գործիչ, իրավաբան։ Գեն-մայոր (1901)։ Ս. Պետերբուրգի Ռազմաիրավաբ. ակադ-ի պրոֆ. (1895–1904)։ Ժողովրդավար. բարեփոխումների կուս-յան (1906) հիմնադիր-առաջնորդներից։ 1919-ից՝ վտարանդի։ Հեղինակ է զեմստվոյական կառ-յանը և տնտ-յանը վերաբերող աշխ-ների։

ԿՈՒԶՄԻՆՍԿԻ Պավել Դմիտրևիչ (1840–1900), ռուս ճարտարագետ։ Ստեղծել է ճառագայթ. տիպի բազմաստիճան գազ. դարձափոխ. տուրբին (1887–92)։ Աշխ-ները վերաբերում են նավի մեխանիկային, ջերմատեխնիկային, օդագնացությանը։

ԿՈՒԶՄԻՆՍԿԻՄ (Kuzminskis) Յոնաս (1906–1985), լիտվացի գրաֆիկ։ ԽՍՀՄ ժող. նկարիչ (1965)։ ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի ակադ. (1975)։ Օգտագործել է լիտվ. ժող. *լուբոկի* ավանդույթները («Վիլնյուս», 1942–57, շարք, Կ. Բորուտայի «Բալտրագիսի ջրաղացները» գրքի նկարազարդումը, 1945)։

ԿՈՒԶՆԵՑԿԻ ԳՈԳՀՈՎԻՏ, Կուզնեցկի Ալաթաուի և Հվ. Սիբիրի Սալաիրյան բլրաշարի միջև: Բարձր.՝ մինչև 500 մ: Մասնատված է Տոմ, Ինիյա գետերի և նրանց վտակների հովիտներով: Կ. գ–ում է Կուզնեցկի ածխային ավազանը:

ԿՈՒԶՆԵՑՈՎ, Ալեքսեյ Ալեքսանդրովիչ (1905–1950), խորհրդ. պետ. և կուս. գործիչ, գեն–լեյտ. (1943): 1945–46–ին՝ Լենինգրադի մարզկոմի և քաղկոմի 1–ին քարտուղար, 1941–44–ին՝ քաղաքի պաշտպ–յան կազմակերպիչներից: Անհիմն բռնադատվել է, գնդակահարվել *«Լենինգրադյան գործով»*:

ԿՈՒԶՆԵՑՈՎ, Անատոլի Բորիսովիչ (1930–2014), ռուս դերասան: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1979): Նկարահանվել է «Սպասեք նամակների», «Իմ ընկեր Կոլկան», «Տվեք բողոքի գիրքը», «Անապատի սպիտակ արևը», «Գիսաստղ», «Թուրքական գամբիտ» և այլ ֆիլմերում: ՌԴ Պետ. մրց. (1997):

ԿՈՒԶՆԵՑՈՎ, Եվգենի Միխայլովիչ (1899/1900–1958), ռուս թատերագետ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1939): Կրկեսագիտության հիմնադիրը ԽՍՀՄ–ում:

ԿՈՒԶՆԵՑՈՎ, Միխայիլ Արտեմևիչ (1918–1986), ռուս կինոդերասան: Ուկր. ԽՍՀ (1955), ՌԽՖՍՀ (1965) ժող. արտիստ: Նկարահանվել է «Մաշենկա», «Իվան Գրոզնի», «Տարաս Շևչենկո», «Նավաստի Չիժիկը», «Երիտասարդ Ռուսաստան» (հեռուստաֆիլմ) և այլ կինոնկարներում:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1952):

ԿՈՒԶՆԵՑՈՎ, Միխայիլ Վասիլևիչ (1913–1989), ռուս օդաչու: ԽՄ հերոս (1943, 1945), ավիացիայի գեն–մայոր (1959): ՀՄՊ–ի ժամանակ եղել է կործանիչ ավիացիայում՝ էսկադրիլիայի և գնդի հրամ.: Վարել է 72 օդ. մարտեր, անձամբ խփել է 22, խմբով՝ 6 ինքնաթիռ:

ԿՈՒԶՆԵՑՈՎ, Յուրի Ալեքսեևիչ (1903–1982), ռուս երկրաբան: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1966): Վ. Ա. ***Կուզնեցովի*** եղբայրը: Աշխ–ները վերաբերում են Արմ. և Արլ. Սիբիրի երկրբ–յանն ու քարաբանությանը: Մագմայական ֆրակցիաների տեսության հիմնադիրներից է:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1983, հետմահու):

ԿՈՒԶՆԵՑՈՎ, Յուրի Պոլիկարպովիչ (1941–2003), ռուս բանաստեղծ: Հեղինակ է «Ամպրոպ» (1966), «Ռուսական հանգույց» (1983), «Հոգին հավատարիմ է անիմանալիի սահմաններին» (1986), «Ոսկե լեռ» (1989), «Ռուսական զիգզագ» (1999), «Քրիստոսի ճանապարհը» (2000), «Եկեղեցական թափոր» (2006) և այլ ժող–ների:

ՌԽՖՍՀ Պետ. (1990), Ս. Ա. Եսենինի (1996), Մ. Յ. Լերմոնտովի (2001) անվ. մրց–ներ:

ԿՈՒԶՆԵՑՈՎ, Նիկոլայ Ալեքսանդրովիչ (ծ. 1939), ավտոմատ կառավարման բնագավառի ռուս գիտնական: ՌԴԱ ակադ. (1994, թղթ. անդամ՝ 1987–ից): Եղել է Ինֆորմացիայի հաղորդման հիմնախնդիրների ինստ–ի տնօրեն (1990–2006): Աշխ–ները վերաբերում են կառավարման համակարգերի տեսությանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1985):

ԿՈՒԶՆԵՑՈՎ, Նիկոլայ Գերասիմովիչ (1904–1974), ԽՍՀՄ ծովակալ: ԽՄ հերոս (1945): 1939–46 և 1951–53–ին՝ ռազմածով. նախարար, 1953–1955–ին գլխավորել է խորհրդ. ՌԾՈՒ–ն: 1948–ին անհիմն մեղադրվել է աստիճանազրկվել՝ փոխծովակալ: Իրավունքները վերականգնվել են 1988–ին (հետմահու):

ԿՈՒԶՆԵՑՈՎ, Նիկոլայ Դմիտրևիչ (1911–1995), ռուս կոնստրուկտոր: ՌԴԱ ակադ. (1974): Սոց. աշխ. հերոս (1957, 1981): Կ–ի ղեկավարությամբ ստեղծվել են ռեակտիվ շարժիչներ ԱՆ–22, Իլ–62, Իլ–86, Տու–144, Տու–154 և այլ ինքնաթիռների համար: Լենինյան մրց. (1957):

ԿՈՒԶՆԵՑՈՎ, Նիկոլայ Իվանովիչ (1864–1932), ռուս բուսաբան–աշխարհագետ: Ս. Պետերբուրգի (1903), Ռուսաստանի (1917), ԽՍՀՄ (1925) ԳԱ–ների թղթ. անդամ: Աշակել է ծածկասերմ բույսերի պոլիֆիլետիկ համակարգեր (1914):

ԿՈՒԶՆԵՑՈՎ, Նիկոլայ Իվանովիչ (1911–1944), ռուս հետախույզ: ԽՄ հերոս (1944, հետմահու): Ներկայանալով իբրև գերմ. սպա՝ կարևոր տեղեկություններ է ձեռք բերել Ռովնո ք–ում: Սպանել է մի շարք աչքի ընկնող հիտլերականների, փախցրել գերմ. գեն–ի: Զոհվել է Բորատինում (Լվովի մարզի Բրոդովյան շրջան):

ԿՈՒԶՆԵՑՈՎ, Նիկոլայ Իվանովիչ (1922–2008), ավազ սերժանտ: ԽՄ հերոս (1945): Փառքի 3 աստիճանի շքանշաններ [1944, 1945, 1980 (ներկայացվել է 1945–ին)]: ՀՄՊ–ի ժամանակ՝ հրանոթի մարտ. անձնակազմի հրամ., աչքի է ընկել Սևաստոպոլի, Լիտվայի և Քյոնիգսբերգի համար մղվող մարտերում:

ԿՈՒԶՆԵՑՈՎ, Նիկոլայ Տիմոֆեևիչ (ծ. 1931), ռուս քիմիկոս: ՌԴԱ ակադ. (1994, թղթ. անդամ՝ 1987–ից): Աշխ–ները վերաբերում են բորի կլաստեր. միացությունների, թեթև և անցում. մետաղների հիդրիդների քիմիային և ստացման տեխնոլոգիային:

ՌԴ Պետ. (1996), Կառ–յան (2002), նախագահի (2005), ՌԴԱ Լ. Գ. Չուգաևի անվ. (2006) մրց–ներ:

ԿՈՒԶՆԵՑՈՎ, Պյոտր Սավվիչ (1899–1968), ռուս. լեզվաբան: Մոսկվայի պատմագր. դպրոցի հիմնադիրներից: Հեղինակ է պատմության տեսություններին, բարբառագիտ–յանը վերաբերող աշխ–ների: 1930–ական թթ–ին հանդես է եկել Ն. *Մառի* տեսության դեմ:

ԿՈՒԶՆԵՑՈՎ, Սերգեյ Իվանովիչ (1900–1987), ռուս մանրէաբան: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1960): Աշխ–ները վերաբերում են ջր. միկրոօրգանիզմների աշխարհագր. ակտիվությանը և էկոլոգիային, նյութերի շրջապտույտում նրանց դերի և լճերի թթվածնային ռեժիմի հարցերին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1985):

ԿՈՒԶՆԵՑՈՎ, Վալերի Ալեքսեևիչ (1906–1985), ռուս երկրաբան: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1970): Յ. Ա. ***Կուզնեցովի*** եղբայրը: Աշխ–ները վերաբերում են Ալթայ–Սայանյան ծալքավորության մարզի տեկտոնիկային, մագմատիզմին և մետաղածնության հարցերին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1983):

ԿՈՒԶՆԵՑՈՎ, Վիկտոր Իվանովիչ (1913–1991), ռուս մեխանիկոս, կառավարման բնագավառի գիտնական: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1968, թղթ. անդամ՝ 1958–ից): Սոց. աշխ. հերոս (1956, 1961): Աշխ–ները վերաբերում են իներցիալ նավագնացության և ինքնուրույն կառավարման համակարգերին: ԽՍՀՄ Պետ. (1943, 1946, 1967, 1977), Լենինյան (1957) մրց–ներ:

ԿՈՒԶՆԵՑՈՎ, Վլադիմիր Դմիտրևիչ (1887–1963), ռուս ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1958): Սոց. աշխ. հերոս (1957): Սիբիրի ֆիզտեխ. ինստ–ի հիմնադիր–տնօրեն (1929–33, 1937–60): Աշակել է մետաղների կտրման ֆիզ. տեսության հիմունքները, առաջինն է ապացուցել դրանց արագընթաց կտրման հնարավորությունը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942):

ԿՈՒԶՆԵՑՈՎ, Ֆեոդոր Անդրեևիչ (1932–2014), ռուս ֆիզքիմիկոս: ՌԴԱ ակադ. (1991, թղթ. անդամ՝ 1987–ից): Աշխ–ները վերաբերում են միկրո– և օպտոէլեկտրոնիկայի իրերի համար տրված հատկություններով նյութերի և կառուցվածքների մշակմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1981):

ԿՈՒԶՆԵՑՈՎԱ, Անտոնինա Միխայլովնա (ծ. 1941), ռուս դերասանուհի, ռեժ.: ՌԴ ժող. արտիստ (1995): 1966–69–ին՝ Մոսկվայի Մ. Ն. Երմոլովայի անվ. թատրոնի, 1969–ից՝ ֆիլհարմոնիայի դերասանուհի: Մոնոներկայացումներից են՝ Հ. Իբսենի «Պեր Գյունտ», Յ. Վ. Գյոթեի «Ֆաուստ», Վ. Շեքսպիրի «Համլետ», Ա. Ս. Պուշկինի «Եվգենի Օնեգին», «Նախկին Ռուսաստանը» (ըստ Վ. Վ. Նաբոկովի), «Զրույց Ալիսայի հետ՝ ժամանակի և ճակատագրի մասին» (ըստ Վ. Ս. Վիսոցկու) ևն: Իր սցենարներով նկարահանել է մոնոֆիլմեր (12 ֆիլմ՝ ըստ Մ. Ի. Ցվետաևայի գործերի ևն):

ԿՈՒԶՆԵՑՈՎԱ, Սվետլանա Ալեքսանդրովնա (ծ. 1985), ռուս մարզուհի (թենիս): ՌԴ ս. վ. վ. (2004): «Մեծ սաղավարտի» մրցաշարերի՝ ԱՄՆ–ի (2004) և Ֆրանսիայի (2009) բաց առաջնությունների, 13 մրցաշարերի անհատ. հաղթող (մինչև 02.1.2010), Ռուսաստանի հավաքականի կազմում՝ Դաշնության գավաթի (2004, 2007, 2008) հաղթող:

ԿՈՒԶՆԵՑՈՎՅԱՆ ՃԵՆԱՊԱԿԻ, ռուս ձեռնարկատերեր Կուզնեցովների ճենապակե իրերի գործարանի արտադրանքը: Առաջին տնայնագործ. հաստատությունը հիմնադրվել է 1810–ին Գժելի մոտ, Մոսկվայի մարզ): Կուզնեցովների ձեռն–յունն առաջիններից է թողարկել ճենապակե և հախճապակե էլեկտրա– և սանտեխ. իրեր:

ԿՈՒԺ, կավե, պղնձե, հախճապակե (երբեմն՝ փայտե) երկար վզով, ուռուցիկ բերանով, ձվաձև փորով երկարավուն անոթ: Առաջին Կ–երը հայտնի են Էնեոլիթյան–բրոնզիդար. ժամանակաշրջանից: Կ. երբեմն օգտագործվել է իբրև չափի միավոր: Կ–ի փոքր տեսակն անվանում են կուլա կամ գավ:

ԿՈՒԺԱՄՅԱՐՈՎ, Կուդդուս Խոջամյարի (1918–1994), ղազախ կոմպոզիտոր: Ղազ. ԽՍՀ (1973), ԽՍՀՄ (1987) ժող. արտիստ: Ույղուր. խորհրդ. կոմպոզիտոր. դպրոցի հիմնադիրը: Հեղինակ է օպերաների («Նազուգում», 1956, ևն), «Չին–Տոմուր» (1969) բալետի, «Հայրենիք» (1986) կանտատի, կամեր–գործիք. և վոկալ գործերի, թատեր. երաժշտության ևն: ԽՍՀՄ (1951), Ղազախ. ԽՍՀ (1984) Պետ. մրց–ներ:

ԿՈՒԺԿՈՏՐՈՒԿ, **ամանակոտրուկ, սատանի աչք,** 1. գորտնուկազգիների (հրանունկազգիներ) ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մինչև 30 տեսակ՝ Եվրասիայի բարեխառն գոտում, ՀՀ–ում՝ 4՝ գրեթե բոլոր մարզերում: Մոլախոտեր են: Գեղազարդիչ է: 2. Ծաղկաբուծության մեջ համասփյուռ ցեղի տեսակներն են:

ԿՈՒԺՈՒՆԻ (Ճերեճյան) Հարություն Զաքարիայի (1918–1976), հաս–քաղ. գործիչ: 1953–ից՝ ՍԴՀԿ Լիբանանի վարչության, 1965–ից՝ կուս–յան կենտր. վարչության քարտուղար: Խաղաղության համաշխ. խորհրդի անդամ, մասնակցել է Հելսինկիի (1965) և Մոսկվայի (1973) խաղաղության համաժողովներին:

ԿՈՒՒՆՋԻ Արխիպ Իվանովիչ (1841/42–1910), հույն գեղանկարիչ: Պերեդվիժնիկ: Կ–ի բնանկարներին («Կեչու պուրակ», 1879, «Լուսնյակ գիշեր Դնեպրի վրա», 1880, ևն) բնորոշ են ռոմանտիկ աշխուժությունը, կոմպոզիցիաների համայնապատկերությունը: Կ–ի «Մայրամուտը անտառում» (1878) գործը ՀԱՊ–ում է:

ԿՈՒԼԱԳԻՆ Նիկոլայ Միխայլովիչ (1860–1940), ռուս կենդանաբան, միջատաբան: Ս. Պետերբուրգի (1913), Ռուսաստանի (1917), ԽՍՀՄ (1925) ԳԱ–ների թղթ. անդամ: Բել. ԽՍՀ ԳԱ (1934) և ՀամԳԳԱ (1935) ակադ.: Աշխ–ները վերաբերում են մեղվաբուծության կենսբ. հիմունքներին, բազմացման և ժառանգականության հարցերին, վնասատուներից բույսերի պաշտպ–յանը:

ԿՈՒԼԱԵՎ Իգոր Ստեպանովիչ (1930–2013), ռուս կենսաքիմիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1991, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1987–ից): Միկրոօրգանիզմների կենսաքիմիայի գիտ. դպրոցի հիմնադիր: Սինթեզել է լիզոամիդազ բակտերիաների պատրաստուկը:

ԿՈՒԼԱԿՈՎ Անատոլի Վասիլևիչ (ծ. 1938), ռուս ֆիզիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1984): Աշխ–ները վերաբերում են մեծ հզորության համակարգերի պլազմ. էներգետիկային: ՌԴ Արդյունաբերողների և ձեռնարկատերերի միության գլխ. տնօրեն (1990–96):

ԿՈՒԼԱԿՈՎԱ Գալինա Ալեքսեևնա (ծ. 1942), ռուս մարզուհի (դահուկավազք): ԽՍՀՄ ս. վ. վ. (1972): Օլիմպ. խաղերի (1972, 1976), աշխարհի (1970, 1974, գավաթակիր՝ 1979) և ԽՍՀՄ բազմակի (1969–81) չեմպիոն:

ԿՈՒԼԱԿՈՎՍԿԻ Ալեքսեյ Ելիսեևիչ (1877–1926), յակուտ բանաստեղծ: Յակուտ. գր. լեզվի, գրկ–յան հիմնադիրը: Հեղինակ է «Բայանայի նզովքը» (1900) յակուտ. չափածո առաջին ստեղծագործության, «Յակուտուհիների դիմանկարներ», «100–ամյա կնոջ երգը», «Գծուծ հարուստը», «Շամանի քունը» և այլ պոեմների (1900–10):

ԿՈՒԼԱՆ, օնագր, ձիերի ցեղի կենդանի: Երկ.՝ 175–200 *սմ*: Ապրում է Առաջավոր, Միջին և Կենտր. Ասիայի անապատներում և կիսաանապատներում: Բազմանում է անազատ պայմաններում: Սիբիական և ինդ. Կ–ները գրանցված են ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ԿՈՒԼԲԵՐԳ (Cullberg) Բիրգիտ (1908–1999), շվեդ պարուհի, պարուսույց: Պարարվ–ում դաս. և ազատ պարը զուգակցել է մնջախաղի հետ: 1968–85–ին՝ «Կուլբերգ բալլետեն» (Ստոկհոլմ) խմբի ղեկ., բեմադրել է Տ. Ռանգստրյոմի «Ֆրեկեն Յուլյա» (1950), «Եդեմ» (1961, ըստ Հ. Ռուսենբերգի), «Խռովություն» (1973, ըստ Բ. Բարտոկի երաժշտության) և այլ բալետներ:

ԿՈՒԼԵԲԱԿԻՆ Վիկտոր Սերգեևիչ (1891–1970), ռուս էլեկտրատեխնիկ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939): Ճարտարագիտասավիացիայի ծառայության գեն–մայոր (1942): Աշխ–ները վերաբերում են ինքնաթիռների էլ. սարքավորմանը, էլ. մեքենաներին և ապարտներին, ավտոմատ կարգավորման տեսությանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

ԿՈՒԼԵՅ (Kule) Եժի (ծ. 1940), լեհ մարգիկ (բռնցքամարտ): Օլիմպ. խաղերի (1964,1968), Եվրոպայի (1963, 1965) չեմպիոն:

ԿՈՒԼԵՆ (Կալեն, Cullen) Ուիլյամ (1710–1790), շոտլանդացի բժիշկ: Հիմնավորել է կենսընթացների կարգավորման «նյարդային սկզբունքը». նրա միակողմանի և մետաֆիզ. մեկնությունը կիրառելի է կլինիկայում և թերապիայում: Ներմուծել է «նևրոզ» եզրույթը:

ԿՈՒԼԵՆԿԱՄՊՖ (Kulenkampff) Գեորգ (1898–1948), գերմանացի ջութակահար: 1916–ից՝ Բրեմենի ֆիլհարմոնիայի կոնցերտմայստեր, հանդես է եկել նաև որպես մենակատար, նվագախմբերի հետ (եռյակում՝ դաշնակահար՝ Է. Ֆիշեր, թավջութակահար՝ Է. Մայնարդի): Լ. վան Բեթհովենի երկերի (մասնավորապես՝ ջութակի կոնցերտի) լավագույն մեկնաբաններից է:

ԿՈՒԼԵՇՈՎ Արկադի Ալեքսանդրովիչ (1914–1978), բելոռուս բանաստեղծ: Բելոռուսիայի ժող. բանաստեղծ (1968): Հեղինակ է «Բրիգադի դրոշը» (1943), «Ցիմբալներ» (1945), «Նոր հուն» (1948), «Խիտ թավուտ» (1956) պոեմների, «Սոճի և կեչի» (1970), «Արագություն» (1978) բանաստեղծությունների ժող–ների: Հայ. հրատարակվել է «Պոեմներ» (1956) ժող–ը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1949):

ԿՈՒԼԵՇՈՎ Լև Վլադիմիրովիչ (1899–1970), ռուս կինոռեժ., կինոտեսաբան, մանկավարժ: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1969): Ա. Ս. *Խոխլովայի* ամուսինը: Նկարահանել է «Միստր Վեստի արտասովոր արկածները բոլշևիկների երկրում» (1924), «Ըստ օրենքի» (1926), «Մեծ մխիթարողը» (1933) և այլ ֆիլմեր: Հեղինակ է «Գործնական կինոռեժիսուրա» (1935), «Կինոռեժիսուրայի հիմունքները» (1941) աշխ–ների:

ԿՈՒԼԵՇՈՎ Վալերի Վլադիմիրովիչ (ծ. 1942), ռուս տնտեսագետ: ՌԳԱ ակադ. (1987): ՌԳԱ ՍԲ Էկոնոմիկայի և արդ. արտադր–յան կազմակերպման ինստ–ի տնօրեն (1992–ից): Աշխ–ները վերաբերում են բազմաճյուղ համալիրների հեռանկար. պլանավորմանը, ճյուղ. ու տարածաշրջ. զարգացման տնտ–մաթ. մոդելավորմանը:

ԿՈՒԼԵՔՄՆԵՐ, արյունածուծ մոծակների սեռ: Հայտնի է մոտ 400 տեսակ՝ հիմնականում արևադարձներում: Հաճախ զանգված. արյունածուծներ են, որոշները՝ ավելի քան 50 վարակիչ և մակարած. հիվանդությունների (դեղին տենդ, տուլարեմիա ևն) փոխանցողներ:

ԿՈՒԼԻ (Cooley) Դենտոն Արթուր (1920–2016), ամերիկացի սրտավիրաբույժ, ժամանակակից սիրտանոթ. վիրաբուժության հիմնադիրներից: Առաջինն է իրականացրել մարդու արհեստ. (սիլիկոնային) սրտի պատվաստումը (1969), մշակել վերելաորտայի պարկանման (1952) և շերտազատվող (1953) անոթալայնանքի մասնահատումը՝ պրոթեզավորմամբ, կատարել սրտի բնածին և ձեռքբերովի արատների վիրահատություններ (1973):

ԿՈՒԼԻ ՓՈՔՐԱՉՂՋԻԿ (Pipistrellus kuhli), **միջերկրածովային փոքրաչղջիկ**, հարթաքիթ չղջիկների ընտանիքի կաթնասուն կենդանի: ՀՀ–ում ապրում է լուսամուտների, դռների, պատերի ճեղքերում, տանիքներում ևն: Մսվում է մանր գիշերաթիթեռներով, մոծակներով ու մլակներով:

ԿՈՒԼԻԲԻՆ Իվան Պետրովիչ (1735–1818), ռուս ինքնուս մեխանիկոս: Կատարելագործել է օպտիկ. սարքերի ապակիների հղկումը: Նախագծել և կառուցել է Նևա գետի վրա 298 *մ* երկ–յան հենամեջ ունեցող միակամար կամուրջի մոդելը: Նախագծել է «հայելային լապտերներ» (լուսարձակների նախատիպը), ազդանշան. հեռագրասարք ևն:

ԿՈՒԼԻԵՎ Կայսըն Շուվալիչ (1917–1985), բալկար բանաստեղծ: Կաբարդինա–Բալկարիայի ժող. բանաստեղծ (1967): Հեղինակ է «Կիրճերի երգեր» (1947–51), «Վիրավոր քարը» (1964, հայ.՝ 1969), «Երեկո» (1974), «Գարնանային լույս» (1979) և այլ բանաստեղծությունների ժող–ների: Հայ. են հրատարակվել նաև «Բարի աչքով (Գիրք Հայաստանի մասին)» (1973), «Արևի հեքիաթը» (1977) երկերը:

ՌԽՖՍՀ (1967), ԽՍՀՄ (1974) Պետ., Լենինյան (1990, հետմահու) մրց–ներ:

ԿՈՒԼԻԿ Գրիգորի Իվանովիչ (1890–1950), ԽՍՀՄ մարշալ (1940), ԽՄ հերոս (1940): 1939–ից՝ ԽՍՀՄ պաշտպ–յան ժողկոմի տեղակալ: ՀՄՊ–ի ժամանակ՝ բանակների հրամ.: Պատերազմից հետո՝ ՋՕ–ի հրամ–ի տեղակալ: Բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել: 1957–ին վերականգնվել է ԽՍՀՄ մարշալի կոչումը:

ԿՈՒԼԻԿՈՎ Անատոլի Սերգեևիչ (ծ. 1946), ռուս ռազմ. գործիչ, բանակի գեն. (1995): Տնտ. գիտ. դ–ր (1992): 1995–98–ին՝ ՌԴ ՆԳ նախարար, 1997–98–ին, միաժամանակ՝ ՌԴ Կառ–յան նախագահի տեղակալ, 1990–92–ին՝ ԽՍՀՄ (1991–ից՝ ՌԴ) ՆԳ վարչության պետ՝ Հս. Կովկասի և Անդրկովկասի գծով: 1992–95–ին՝ ՌԴ ՆԳ նախարարի տեղակալ, ՌԴ ՆԳ ներքին զորքերի հրամ., միաժամանակ՝ Հս. Կովկասի Ներքին զորքերի միացյալ ուժերի հրամ. (1992): 1993–ի հոկտ–ի ճգնաժամի ընթացքում ղեկավարել է Մոսկվայի ներքին զորքերի գործունեությունը: 1995–ին գլխավորել է Դաշն. ուժերի միացյալ խմբավորումը Չեչնիա: Հանրապետությունում:

ԿՈՒԼԻԿՈՎ Վիկտոր Գեորգիևիչ (1921–2013), ԽՍՀՄ մարշալ (1977), ԽՄ հերոս (1981): ՀՄՊ–ի մասնակից: 1969–ից՝ Գերմանիայում տեղակայված խորհրդ. զորքերի գլխ. հրամ.: 1971–ից՝ ԽՍՀՄ պաշտպ–յան նախարարի 1–ին տեղակալ. 1971–77–ին՝ ԳԾ պետ, 1977–89–ին՝ Վարշավայի պայմանագրի անդամ երկրների միացյալ զինվ. ուժերի գլխ. հրամ.: Լենինյան մրց. (1983):

ԿՈՒԼԻԿՈՎՈՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ, 1380–ի սեպտ. 8–ին Կուլիկովոյի դաշտում՝ Մոսկվայի և Վլադիմիրի Մեծ իշխան Դմիտրի Դոնսկոյի գլխավորած ռուս. գնդերի և Մամայ խանի ղեկավարած մոնղոլ–թաթար. զորքերի միջև: Ավարտվել է մոնղոլ–թաթարների ջախջախմամբ: Կ. ճ–ի վայրում 1996–ին բացվել է «Կուլիկովյան դաշտ» թանգարան–արգելոցը:

ԿՈՒԼԻԿՈՎՍԿԻ Անդրեյ Գենադիևիչ (ծ. 1933), ռուս մեխանիկոս: ՌԳԱ ակադ. (2006, թղթ. անդամ՝ 1991–ից): Աշխ–ները վերաբերում են խզման մակերևույթներով հոծ միջավայրերի հոսանքների կայունությանը, մագնիս. հիդրոդինամիկային:

ՌԴ Պետ. (2003), ՌԳԱ Ս. Ա. Չապլիգինի (1967), Լ. Ի. Սեդովի (2002) մրց–ներ:

ԿՈՒԼԻՇ Պանտելեյմոն Ալեքսանդրովիչ (1819–1897), ուկրաինացի գրող, պատմաբան, ազգագրագետ: Հեղինակ է «Ուկրաինա» (1843) պատմ. պոեմի, «Սև Ռադա.1663 թվականի տարեգրություն» (1845–57) պատմ. վեպի: Կ. ռոմանտիզմից աստիճանաբար հարել է «ազգագրական» ռեալիզմին:


ԿՈՒԼԻՇ Սավվա Յակովլևիչ (1936–2001), ռուս. կինոռեժ.: ՌԴ ժող. արտիստ (1995): Նկարահանել է «Վերջին նամակները» (1966, վավերագր., Խ. Մտոյչևի հետ), «Մեռյալ սեզոն» (1968), «Թռիչք» (1980), «Հին Արբատի հեքիաթներ..., հեքիաթ–

ներ...., հեքիաթներ» (1982), «Ողբերգություն «ռոք» ոճում» (1988), «Երկաթե վարագույր» (1994) և այլ ֆիլմեր:

ԿՈՒԼԻՋԱՆՈՎ Լև Ալեքսանդրի (1924–2002), հայազգի կինոռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1976): Սոց. աշխ. հերոս (1984): ԳԴեմՀ արվ–ի ակադ–ի թղթ. անդամ: Նկարահանել է հոգեբ. խոր վերլուծությամբ ֆիլմեր՝ «Տիկնայք» (ըստ Ա. Պ. Չեխովի, 1955, Հենրիկ Բ. *Հովհաննիսյանի* հետ), «Տունը, որտեղ ես ապրում եմ» (1957, Յ. *Մեզելի* հետ), «Երբ ծառերը մեծ էին» (1962), «Ոճիր և պատիժ» (ըստ Ֆ. Մ. Դոստոևսկու, 1970), «Աստեղային րոպե» (1972, Արտավազդ *Փելեշյանի* հետ, գեղ–վավերագր.), «Կարլ Մարքս: Երիտասարդ տարիներ» (7 սերիա, 1980), «Անմոռուկներ» (1994) ևն:

Համամիութ. կփ գլխ. (1958), Մեծ (1981), ՌԽՖՍՀ Պետ. (1971), Լենինյան (1982) մրց–ներ, Լենինի (2), ՌԴ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 3–րդ աստիճանի (1999) շքանշաններ:

ԿՈՒԼՄԻՆԱՑԻԱ (< լատ. culmen, culminis – գագաթ), 1. որևէ բանի բարձրագույն լարման, վերելքի, զարգացման կետը: 2. Աստղագիտ–յան մեջ՝ լուսատուների երկն. միջօրեականով անցնելու պահը: Տարբերում են վերին Կ. (M), երբ լուսատուն մոտ է զենիթին, և ստորին Կ. (M′), երբ այն մոտ է *նադիրին* (Z′) (P, p′). աշխարհի հս. և հվ. բևեռներն են: 3. (Գրկ.) գործողության զարգացման բարձրագույն լարման պահ, որն առավելագույն չափով սրում է գեղ. կոնֆլիկտը: Կ–ում կատարվում կամ նախատեսվում է հանգուցալուծումը նախապատրաստող բեկում («ման թակարդի» տեսարանը Վ. Շեքսպիրի «Համլետ»–ում, Ավարայրի ճակատամարտը Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում): 4. Երաժշտ–յան մեջ աչքի է ընկնում բարձր ռեգիստրով, ինչ–ողության ուժգնության աճով, հարմոնիկ միջոցներով:



ԿՈՒԼՅԱԲԿՈ Ալեքսեյ Ալեքսանդրովիչ (1866–1930), ռուս. ֆիզիոլոգ: Առաջինն է փորձարար. ճանապարհով վերակենդանացրել մարդու մեկուսացրած սիրտը՝ մահվանից 20 *ժ* անց: Աշխ–ները վերաբերում են ԳՆՀ–ի ֆիզիոլոգիային, նյարդամկան. ապարատին:

ԿՈՒԼՅԱԿԱՆ (Culiacan), ք. Մեքսիկայի արմ–ում, Սինալոա նահց–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 858,6 հզ. (2010): Առևտրի կենտրոն է: Ունի համալսարան:

ԿՈՒԼՆԵՎ Յակով Պետրովիչ (1763–1812), ռուս. զորահրամ., գեն–մայոր (1808): 1808–09–ի ռուս–շվեդ. պատերազմում գլխավորել է զինված ջոկատի անցումը սառած Բոտնիկի ծոցով: Հայրենս. պատերազմում (1812) Կ–ի ղեկավարած կովկաս. ջոկատն աչքի է ընկել բելոռուս. Կլյաստիցներ գ–ի մոտ մարշալ Ն. Ծ. Ուդինոյի՝ ֆրանս. կորպուսի դեմ տարած հաղթանակով: Մահացու վիրավորվել է մարտում:

ԿՈՒԼՈՆ (Coulomb) Շառլ Օգյուստեն (1736–1806), ֆրանսիացի ճարտարագետ և ֆիզիկոս: Փարիզի ԳԱ անդամ (1781): Հետազոտել է մազերի, մետաքսաթելերի (1777) և մետաղալարերի (1784) ոլորումը և ձևակերպել այդ երևույթի օրենքները: Ստեղծել է ոլորակշեռք և այն կիրառել կետային էլ. լիցքերի ու մագնիս. բևեռների փոխազդեցությունն ուսումնասիրելու համար (տես *Կուլոնի օրենք*): Ձևակերպել է չոր շփման օրենքները: Ցույց է տվել, որ էլ. լիցքերը բաշխվում են հաղորդչի մակերևույթի վրա, ներմուծել է «մագնիսական մոմենտի» և «լիցքերի բևեռացում» հասկացությունները: Նրա անունով է կոչվել էլեկտրականության քանակի միավորը՝ *Կուլոն*:

ԿՈՒԼՈՆ, 1. էլեկտրականության քանակի (էլ. լիցքի) միավորը ՄՄՀ–ում: Կրճատ նշանակվում է *Կլն*: 1 *Կլն* էլեկտրականության այն քանակն է, որն անցնում է հաղորդչի լայն. հատույթով 1 *վ*–ում՝ 1 *Ա* անփոփոխ հոսանքի դեպքում: 1 *Կլն* = 1 *Ա* · *վ*: Կոչվել է ֆրանսիացի ֆիզիկոս Շ. *Կուլոնի* անունով: 2. էլ. շեղման հոսքի (էլ. ինդուկցիայի հոսքի) միավորը ՄՄՀ–ում: 1 *Կլն* = 4 ,3 · 10^9 CGSE միավոր = = 0,4 CGSM միավոր:

ԿՈՒԼՈՆԱՉԱՓԱԽԹՅՈՒՆ, վերլուծության էլեկտրաքիմ. եղանակների համախումբ, որը հիմնված է էլեկտրոդի վրա այս կամ այն նյութի անջատման ժամանակ ծախսված էլեկտրականության քանակի չափման վրա: Կիրառվում է մետաղ. ծածկույթների, օքսիդային թաղանթների հաստությունները որոշելու համար և քիմ. վերլուծության մեջ:

ԿՈՒԼՈՆԻ ԿՇԵՌ–Ք, պարզագույն ոլորակշեռք: Հնարել է Շ. *Կուլոնը* (1784) և կիրառել կետային էլ. լիցքերի և մագնիս. բևեռների փոխազդեցությունն ուսումնասիրելու համար:

ԿՈՒԼՈՆԻ ՕՐԵՆՔ, *էլեկտրաստատիկայի* հիմն. օրենքը. արտահայտում է 2 անշարժ կետային լիցքերի փոխազդեցության ուժի կախումը լիցքերի մեծությունից և հեռ–յունից: Կ. օ–ի համաձայն՝ իրարից r հեռ–յամբ q_1 և q_2 կետային լիցքերի փոխազդեցության F ուժն ուղիղ համեմատական է դրանց արտադրյալին և հակադարձ համեմատական՝ r հեռ–յան քառակուսուն՝

$$F = \frac{q_1 q_2}{r^2} :$$

Սահմանել է Շ. *Կուլոնը* 1785–ին:

ԿՈՒԼՍՈՒՄ Ումմ (Ֆաթմա Իբրահիմ, 1904/08–1975), եգիպտացի երգչուհի: 1937–ից՝ Կահիրեի ռադիոյի մշակերգչուհի, 1930–40–ական թթ–ին նկարահանվել է երաժշտ. ֆիլմերում: Ճանաչվել է արաբ. երգերով: 1982–ին Եգիպտոսում սահմանվել է Կ–ի անվ. մրց.:

ԿՈՒԼՏԻՎԱՏՈՐ, հողի մակերես. շերտի փխրեցման, մոլախոտերի ոչնչացման, բույսի բուկլիցի և լրացուցիչ սնուցման (կուլտիվացման) գործիք:

ԿՈՒԼՏՈՒՐԻԶՄ (ֆրանս.՝ culturisme), **բոդի բիլդինգ**, տարբեր ծանրություններով ֆիզ. վարժությունների համակարգ, որի նպատակը մարդու մարմնի մկանունքը զարգացնելն է:

ԿՈՒԼՈՒՆԴԻՆՅԱՆ ԴԱՇՏԱՎԱՅՐ, *Կուլունդինյան տափաստան*, Արևմտասիբիր. հարթավայրի հվ. մասը: Տարածքը՝ 100 հզ. *կմ*^{2}, բարձր.՝ 100–250 *մ*: Երկրագործ. շրջան է:

ԿՈՒԽ, Կոխ, Խոխ, լեռների, գագաթների, լ–շղթաների տեղային անվանումը Տաջիկստանում, Հս. Կովկասում, Իրանում, Աֆղանստանում (համապատասխանում է հայ. «լեռ» բառին): Ներառված է աշխարհագր. անվանումների ցանկում (օր.՝ Ադայկոխ լ. Կովկասում, ևն):

ԿՈՒԿ (Cook) Ջեյմս (1728–1779), անգլիացի ծովագնաց: Գլխավորել է Համաշխ. օվկ–ի հետազոտման 3 արշավախումբ: Խաղաղ օվկ–ում հայտնագործել է բազմաթիվ կղզիներ: 1–ինի ընթացքում հետազոտել է Նոր Զելանդիան, նավարկել Հս. և Հվ. կղզիների շուրջ, ուսումնասիրել Ավստրալիայի ափերը: 2–րդի ընթացքում հայտնագործել է Նոր Կալեդոնիա, Նոր Ֆոլկ, Սանդվիչյան, Հվ. Ջորջիա կղզիները: Թափանցել է հվ. բևեռ. շրջան (71º10′), սակայն Հվ. ցամաքը գտնել չի հաջողել: 3–րդի ընթացքում ուսումնասիրել է Խաղաղ օվկ–ի հս. շրջանները, հայտնագործել Հավայան կղզին, որտեղ էլ նրան սպանել են բնիկները: Կ–ի անունով կոչվել են լեռ, ծոց, կղզիներ, նեղուց:

ԿՈՒԿԱՅ (Կոբո–դայսի, 774–835), ճապոնացի կրոն. մտածող, բուդդ. էզոտերիկ սինգոն դպրոցի հիմնադիրը:

ԿՈՒԿԻ ԼԵՌ, ամենաբարձր լեռը Նոր Զելանդիայում՝ Հվ. կղզում: Բարձր.՝ 3764 *մ*: Կան սառցադաշտեր: Կոչվել է Ջ. *Կուկի* անունով:

ԿՈՒԿԻ ԾՈՑ, Խաղաղ օվկ–ում՝ Ալյասկայի հվ. ափերի մոտ: Երկ.՝ 370 *կմ*, լայն.՝ 18–111 *կմ*, խոր.՝ 22–78 *մ*: Նվինգստ–ը՝ Անկորիջ: Կոչվել է Ջ. *Կուկի* անունով:

ԿՈՒԿԻ ԿՂԶԻՆԵՐ, կղզեխումբ Պոլինեզիայում: Բաղկացած է 15 կղզուց: Ընդհ. տարածքը՝ 241 *կմ*^{2}, բն.՝ 15 հզ. (2011): Մայրաքաղաքը՝ Ավառու: 1888–ին՝ Բրիտ. կայսրության պրոտեկտորատ, 1901–ին փոխանցվել է Նոր Զելանդիային, 1965–ին՝ ինքնակառավարվող պետ. կազմավորում Նոր Զելանդիայի համագործակցության շրջանակում: Երկրների մեծ մասը Կ. կ. չի ճանաչում որպես միջազգ. սուբյեկտ: Կոչվել են Ջ. *Կուկի* անունով:

ԿՈՒԿԻ ՆԵՂՈՒՏ, Նոր Զելանդիայի Հվ. և Հս. կղզիների միջև: Միացնում է Թասմանի ծովը Խաղաղ օվկ–ի հետ: Երկ.՝ 107 *կմ*, լայն.՝ 22–91 *կմ*, առլգն խոր.՝ 97 *մ*: Հս. կղզում է Վելինգտոն ք–ը: Կոչվել է Ջ. *Կուկի* անունով:

ԿՈՒԿԻ–ՉԻՆ (Հնդկաստանում՝ կուկի, Մյանմայում՝ չին), տիբեթա–բիրման. ժողղ–ների խումբ Հնդկաստանի հս–արլ–ում (1 մլն, հիմնականում՝ Մանիպուր, Ասամ, Միզորամ նահց–ներ), Մյանմայի արմ–ում (1 մլն, Չին և Ռոկհայն ազգ. մարզեր, Սիկայն և Մագուե մարզեր), Բանգլադեշի հվ–արլ–ում (25 հզ., Չիտտագոնգյան լեռն. շրջան): Խոսում են տիբեթա–բիրման. լեզուների կուկի–չին–նագա ճյուղի կուկի–չինյան լեզուներով: Պահպանում են ավանդ. հավատալիքները, կան քրիստոնյաներ և բուդդայականներ, միքզոնների մեջ՝ հուդայականներ:

ԿՈՒԿԼԱԿ, **Գուգլակ**, ամրոց Կիլիկիայի համանուն լ–անցքում՝ Փոքր Ասիայից Մերձ. Արևելք տանող ճանապարհին: Հայտնի է նաև «Դուռն Կապան Կիլիկիո» և «Գուգլակ Հայոց» անվանումներով: Կա–

ռուցված է 450 *մ* բարձր–յամբ, գահավեժ կիրճերով շրջապատված սարահարթի վրա: Պահպանվել են պարսպի հվ. և արմ. որոշ հատվածներ, հրդեհից մնասված դղյակի, ջրավազանի, բնակելի և օժանդակ շինությունների մնացորդներ:

ԿՈՒԿԼԱՉՅՈՎ Յուրի Դմիտրևիչ (ծ. 1949), ռուս. ծաղրածու–կենդանավարժ: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1986): Ռուսաստանում առաջինն է վարժեցրել կատուներ, հիմնադրել աշխարհում միակ՝ վարժեցված կատուների թատրոն (2005–ից՝ «Կուկլաչյովի կատուների թատրոն»): Հեղինակ է «Իմ բարեկամ կատուները» (1981), «Բառրու և գթության բանակի մարտիկները» (2005) և այլ մանկ. գրքերի: Կ–ի թատրոնում է նաև որդին՝ **Դմիտրի Կ.** (ծ. 1975), ՌԴ վաստ. արտիստ (2009):

ԿՈՒԿՐԻՆԻԿՍՆԵՐ (ազգանունների 1–ին տառերից կազմված կեղծանուն), ռուս գրաֆիկների և նկարիչների ստեղծագործ. խումբ: **Կուպրիանով** Միխայիլ Վասիլևիչ (1903–1991), **Կոլով** Պորֆիրի Նիկիտիչ (1902–1990), **Սոկոլով** Նիկոլայ Ալեքսանդրովիչ (1903–2000): ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի ակադ–ներ (1947), ԽՍՀՄ ժող. նկարիչներ (1958), Սոց. աշխ. հերոսներ (Կոլով՝ 1972, Կուպրիանով՝ 1973, Սոկոլով՝ 1973): Հեղինակ են ներքաղ. և միջազգ. կյանքի թեմաներով սուր գրոտեսկ. ծաղրանկարների («Տրանսպորտ», 1933–34, «Պատերազմի հրձիգներ», 1953–57, շարքեր), քաղ. պլակատների («Անխնա ջախջախենք ու ոչնչացնենք թշնամուն» (1941), գրքերի պատկերազարդումների, նկարների («Հին տերերը», 1936–37, «Վերջ: Վերջին ժամերը Հիտլերի շտաբում», 1947–48): Առանձին ստեղծել են դիմանկարներ և բնանկարներ:

ԽՍՀՄ Պետ. (1942, 1947, 1949, 1950, 1951, 1975), Լենինյան (1965) մրց–ներ:

ԿՈՒԿՈՒԶԵԼ Իոհան (հուն.՝ Յոհաննիս Կուկուզելիս, մոտ 1280–1360–ի և1375–ի միջև), բուլղար օրհներգագիր, երգիչ, երաժիշտ–տեսաբան: Բյուզ. եկեղեց. երաժշտության մեջ ստեղծել է նոր ուղղություն, կատարելագործել բյուզ. նոտագրությունը («Կուկուզելյան նևմեր»): Հեղինակ է երաժշտատես. աշխ–ների:

ԿՈՒԿՈՒ–ՅԱՄԱՆ, նախուր, երկնագույն խոյ, սնամեջ եղջերավորների ընտանիքի երկկճղակավոր կենդանի: Սարմնի երկ.՝ մինչև 165 *սմ*: Ապրում է Կենտր. Ասիայի բարձր լեռներում, 1983–ին հայտնաբերվել է Պամիրում (Պակիստան): Որսի կենդանի է (օգտագործում են միսը, կաշին):

ԿՈՒԿՈՒՆՅԱՆ Սարգիս Սովսեսի (1863–1913), ազգ–ազատագր. շարժման գործիչ: 1890–ի սեպտ–ին 78–հոգանոց ջոկատով փորձել է անցնել Արմ. Հայաստան, թուրք սահմանապահները ձերբակալել են: Կ. դատապարտվել է 20 տարվա բանտարկության և աքսորվել Սախալին: 1906–ին վերադարձել է ծննդավայր. 1909–10–ին դարձյալ ձերբակալվել է և դատապարտվել 15 տարվա տաժանակրության: Մահացել է բանտում:

ԿՈՒԿՈՒՆՈՐ, Ցինհայ, անհոսք լիճ Չինաստանում՝ Նանշանի լ–ներում՝ 3205 *մ* բարձրյան վրա: Մակերեսը՝ 4,2 հզ. *կմ*^{2}, խոր.՝ մինչև 38 *մ*: Նոյեմբ–ից մարտ ծածկված է սառույցով: Հարուստ է ձկներով:

ԿՈՒԿՈՒՇԿԻԼԻ, լ–շղթա Հս. Տիբեթի բարձրավանդակում՝ Չինաստանում: Երկ.՝ մոտ 800 *կմ*, բարձր.՝ 6000 *մ*: Կազմված է առանձին զանգվածներից և լ–շղթաներից: Կան քարքարոտ անապատներ, սառցաղաշտեր:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆ Յուրի Ստեպանովիչ (ծ. 1929), ռուս. պատմաբան, խմբ., գիտ–յան կազմակերպիչ: ՌԳԱ ակադ. (1987, թղթ. անդամ՝ 1979–ից): ՌԴ գիտ. վաստ. գործիչ (2004): «Բանբեր Մոսկվայի համալսարանի» հանդեսի գլխ. խմբ.: Աշխ–ները վերաբերում են XX դ–ի Ռուսաստանի պատմությանը:

ԿՈՒԿՈՒՋԱՆՈՎ (Կուկուջանյան) Նիկոլայ Իվանի (1896–1970), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1945): Բժշկ. ծառայության գնդ. (1962): ՎԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1962): Սերգեյ և Վլադիմիր ***Կուկուջանովների*** հայրը: 1945–70–ին՝ Թբիլիսիի բժիշկների կատարելագործման ինստ–ի ռազմադաշտ. վիրաբուժության ամբիոնի վարիչ: Աշակել է աճուկ. ճողվածքի վիրահատ. բուժման նոր մեթոդներ:

ԿՈՒԿՈՒՋԱՆՈՎ Սերգեյ Նիկոլայի (ծ. 1933), մեխանիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1988), պրոֆ. (1994): Նիկոլայ ***Կուկուջանովի*** որդին, Վլադիմիր ***Կուկուջանովի*** եղբայրը: Աշխ–ները վերաբերում են ձևախախտվող առաձգ. մարմնի մեխանիկային, թաղանթների տատանումների և կայունության տեսությանը, շին. մեխանիկային:

ԿՈՒԿՈՒՋԱՆՈՎ Վլադիմիր Նիկոլայի (1931–2013), մեխանիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1981): ՌԴ գիտ. վաստ. գործիչ (1996): ՌԲՆԳԱ թղթ. (1997), ՀՀ ԳԱԱ արտ. (2008) անդամ: Նիկոլայ ***Կուկուջանովի*** որդին, Սերգեյ ***Կուկուջանովի*** եղբայրը: Աշխ–ները վերաբերում են ոչ առաձգ. միջավայրի դինամիկային, ձևախախտվող պինդ մարմնի մեխանիկայում թվային մոդելավորմանը, նյութերի պլաստիկ հատկությունների վրա իմպուլսային էլեկտրամագնիս. դաշտերի ազդեցության տես. և փորձարար. հետազոտություններին:

ԿՈՒԿՈՒՏԱ (Cúcuta), ք. Կոլումբիայում՝ Վենեսուելայի հետ սահմանին, Հս. Սանտանդեր դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 603,8 հզ. (2010): Ունի համալսարան:

ԿՈՒՀԱՉ, Կոխ (Kuhač, Koch), Ֆրանյո (1834–1911), խորվաթ երաժշտագետ, բանագետ, խորվաթ. երաժշտ. ազգագրության, պատմագիտ–յան հիմնադիրը: 1859–71–ին հավաքել է սլավոն. ժողդ–ների (Բալկաններ), նաև հունգ., ավստր. և այլ ժող. երգեր:

ԿՈՒՂԱՆՈՎԻՏՅ, գվո Վասպուրական նհնգ–ում՝ Կուղան գետակի (այժմ՝ Խոշաբի վտակ Գոլան–դերեսի) հովտում: Նույնացվում է Ասորեստանի Սարգոն II թագավորի սեպագիր արձանագրություններում հիշատակվող (մ. թ. ա. 714) Կալանիային (համանուն բերդով):

ԿՈՒՂԵՐ, կրծողների ցեղ: Սարմնի երկ.՝ մոտ 80 (մինչև 130) *սմ*, կ. գ.՝ մոտ 18 (մինչև 32) *կգ*: Հայտնի է 2 տեսակ՝ սովոր. և կանադ. (Հս. Ամերիկայում)՝ Եվրասիայի անտառ. գոտում: Ապրում է կիսաջր. պայմաններում՝ գաղութներով: Լավ լողում են և սուզվում (ջրի տակ կարող են մնալ 4–5 *ր*): Մորթին թանկարժեք է: Բուծում են արգելոցներում և առանձին վայրերում: Որսը խիստ սահմանափակ է:

ԿՈՒՂԼԻ, կզաքիսազգիների ընտանիքի կաթնասուն կենդանի: Սարմնի երկ.՝ մինչև 105, պոչինը՝ մինչև 23 *սմ*: Ապրում է տայգայում և Եվրասիայի ու Հս. Ամերիկայի տունդրայում: Ունի արդյունագործ. նշանակություն:

ԿՈՒԽ (թյուրք.), ավազ, ավազ. զանգվածներ: Տերմինը սովորաբար գործածվում է ածականի հետ՝ ցույց տալով ավազի գույնը և այլ նշաններ (օր.՝ կարա՝ սև, կզըլ՝ կարմիր, ակ՝ սպիտակ, թաու՝ լեռն.):

ԿՈՒՄ, ք. Իրանում, համանուն օստանի վարչ. կենտրոնը, շիաների սրբազան քաղաքը: Բն.՝ 1,1 մլն (2012): Հայտնի է V դ–ից, պահպանվել են Տաճարային մզկիթը (XI–XII դդ.) և Ֆաթիմայի դամբարանը (XVI դ.):

ԿՈՒՄԱ, գետ Հս. Կովկասում: Սկիզբ է առնում Մեծ Կովկասի Ժայռոտ լ–շղթայի հս. լանջերից, կորչում Մերձկասպյան դաշտավայրում՝ չհասնելով Կասպից ծով: Երկ.՝ 802 *կմ*, ավազանը՝ 33,5 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը (միջին հոսանքում)՝ 10,9 *մ*^{3}/*վ*: Ափին են Միներալնիե Վոդի, Զելենոկումսկ, Բուդյոնովսկ ք–ները:

ԿՈՒՄԱ–ՄԱՆԻՉԻ ԻՋՎԱԾՔ, տեկտ. իջվածք Արևելաեվրոպ. հարթավայրի և Նախկովկասի միջև: Լայն.՝ 20–30 *կմ* (կենտր. մասում՝ 1–2 *կմ*): Ծածկված է լճերով և ջրամբարներով: Կառուցվել է Կումա–Մանիչի ջրանցքը: Իջվածքով է անցնում Եվրոպայի և Ասիայի պայման. սահմանը:

ԿՈՒՄԱՄՈՏՈ, ք. Ճապոնիայի Կյուսյու կղզում, համանուն պրեֆեկտուրայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 740 հզ. (2014):

ԿՈՒՄԱՅ, ձյան անգղ, գորշ անգղների սեռի թռչուն: Երկ.՝ մինչև 1,5 *մ*: Ապրում է Միջին (Տյան Շան, Պամիր) և Կենտր. Ասիայում:

ԿՈՒՄԱՅՐԻ, Գյումրի, գետ ՀՀ Շիրակի մարզում: Ախուրյանի ձախ վտակը: Սկիզբ է առնում Շիրակի լ–շղթայի հվ. լանջերից՝ 2040 *մ* բարձր–ից: Երկ.՝ 21 *կմ*, ավազանը՝ 43 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 0,16 *մ*^{3}/*վ*: Ջրերն օգտագործում են ոռոգման նպատակով:

ԿՈՒՄԱՅՐԻ, Կումրի, բերդավան Այրարատ նհնգ–ի Շիրակ գվո–ում: Անվանումն առաջացել է մ. թ. ա. VIII դ–ի վերջին այնտեղ հաստատված կիմերների ցեղանունից: 1830–ական թթ–ի սկզբին Կ–ի մոտ կառուցվել է նոր քք, որը Նիկոլայ I ցարի այցելությունից (1837) հետո նրա կնոջ՝ Ալեքսանդրայի անունով անվանվել է Ալեքսանդրապոլ (այժմ՝ ***Գյումրի***):

«ԿՈՒՄԱՅՐԻ», հաս–քաղ., կրթամշակութ. շաբաթաթերթ (1923–2013, Լենինական, այժմ՝ Գյումրի, մինչև 1990–ը՝ «Բանվոր»՝ ՀԿԿ Լենինականի քաղկոմի և ժող. պատգմ–ների քաղխորհրդի պաշտոնաթերթը): Խմբ–ներ՝ Աշոտ Հախումյան, Երվանդ Խոջամիրյան, Վահան ***Ծովյան***, Տիգրան Խորոնյան, Հմայակ ***Միրաս***, Հովհաննես ***Բաղդասարյան***, Խիկար ***Բարսեղյան***, Վազգեն ***Ամիրբեկյան***, Գաբրիել ***Արևյան***, Աղասի Աբրահամյան, Անահիտ Նորիկյան և ուր.:

ԿՈՒՄԱՆԱ, (Cumaná), ք–նվինգստ Վենեսուելայում, Սուկրեն նհնգ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 212 հզ. (2012): Ունի համալսարան (1520–ից): Հվ. Ամերիկայում իսպ. առաջին բնակավայրերից է:

ԿՈՒՄԱՆՈՎՈ (Kumanovo), ք. Մակեդոնիայի հս–ում: Բն.՝ 116 հզ. (2010): Կան պողպատե կառուցվածքների, ավտոպահեստամասերի, կերամիկ. իրերի արտադր–յան ձեռն–ներ: Հայտնի է 1519–ից:

ԿՈՒՄԱՍԻ (Kumasi), ք. Գանայում, Աշանտի մարզի վարչ. կենտրոնը: Երկթղ. և ճանապարհ. հանգույց է: Բն.՝ 2 մլն (2012): Քաղաքամերձ շրջանում արդյունահանում են ոսկի և բոքսիդներ:

ԿՈՒՄԱՐԱՏՈՒՆԳԱ, Բանդարանաիկե Չանդրիկա (ծ. 1945), Շրի Լանկայի

նախագահ՝ 1994–2005-ին, վարչապետ՝ 1994-ի օգոստ–նոյեմբ-ին: 1993-ին՝ Արմ. պրովինցիաների գլխ. նախարար: Շրի Լանկայի Ժող. կուս-յան հիմնադիրներից (1984): 1994-ից՝ Ժող. դաշինքի ձախ կուսակց. խմբավորման առաջնորդ:

ԿՈՒՄԱՐԻ, *Կոմորին*, հրվանդան Հնդկաստանում, Հինդուստան թ–կղզու հվ. ծայրակետը (8°04′ հվ. լայն-յան, 77°35′ արլ. երկայն-յան):

ԿՈՒՄԱՐԻԼԱ ԲՀԱՏՏԱ, VII դ–ի հնդիկ փիլ. և կրոն. գործիչ, միմանսա կրոնափիլ. դպրոցի 2 գլխ. ուղղություններից մեկի հիմնադիրը:

ԿՈՒՄԱՐԻՆ, *Օ–օքսիդարչնաթթվի լակտոն*, նոր հնձած խոտի հոտով անգույն բյուրեղ. նյութ է, $t_{հալ.}$՝ 70°C: Կիրառվում է որպես հոտավետ նյութ ծխախոտի և օծանելիքի արտադր-յան մեջ:

ԿՈՒՄԺԱ, սաղմոնանձկների ընտանիքի գաղթող ձուկ: Մոտ ազգակից է սաղմոնին: Երկ.՝ մինչև 1 *մ*, կ. զ.՝ մինչև 51 *կգ*: Ապրում է Եվրոպայի ծովերի առափնյա ջրերում, այդ թվում՝ Բալթիկ, Սև, Կասպից և Արալյան ծովերում: Արդյունագործ. արժեքավոր ձուկ է: Քաղցրահամ ջրերի ձևերը կարմրախայտերն են (իշխաններ): Արալյան ենթատեսակը պահպանվում է:

ԿՈՒՄԻԿԵՐԵՆ, *կումիկների* լեզուն: Պատկանում է թյուրք. լեզվաընտանիքի ղփչաղյան խմբին: Գրի հիմքում արաբ. (մինչև 1929–ը), լատ. (1929–38), ռուս. (1938–ից) այբուբենն է:

ԿՈՒՄԻԿՆԵՐ (ինքնանվանումը՝ կումուկ), ժողդ ՌԴ-ում: Ընդհ. թիվը՝ 422,4 հզ. (2002): Ապրում են Դաղստանում (365,8 հզ.), Հս. Օսիայում, Չեչնիայում, Ստավրոպոլի երկրամասում, Ղազախստանում, Ուկրաինայում, Թուրքմենստանում, Ադրբեջանում և այլուր: Լեզուն՝ *կումիկերեն*: Սուննի մահմեդական են:

ԿՈՒՄԻՍ (թյուրք.՝ կրմրզ), հովատակի (հազվադեպ՝ կովերի և ուղտերի) կաթից պատրաստած կաթնաթթվային ըմպելիք: Պարունակում է 2–2,5 % սպիտակուց, 1–2 % ճարպ, 3,5–4,8 % շաքար, C, A, D, E, PP վիտամիններ, 0,6–1,2 % կաթնաթթու և 1–3 % սպիրտ: Օգտագործում են *կումիսաբուժության* համար:

ԿՈՒՄԻՄԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, *կումիսի* օգտագործումը բուժիչ նպատակներով՝ թոքերի և ավշահանգույցների տուբերկուլոզի, հյութվածության, սակավարյունության, ստամոքսաղիք. հիվանդությունների ժամանակ:

ԿՈՒՄԿՈՒՄԱՋՅԱՆ Վիկտոր Արտավազդի (1926–2003), ուռուցքաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1976): Աշխ-ները վերաբերում են օրգանիզմի վրա տարբեր քիմ. նյութերի քաղցկեղածնության և մուտածնության հարցերին:

ԿՈՒՄՈՆ, իզոպրոպիլբենզոլ, $C_6H_5CH(CH_3)_2$, հաճելի հոտով անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 152,4°C: Գոլորշիներն օդի հետ առաջացնում են պայթուցիկ խառնուրդ: Թունավոր է, ազդում է արյունաստեղծ օրգանների վրա:

ԿՈՒՄՈՒԼՅԱՏԻՎ ԿԱՊԵՐ (լատ.՝ cumulatio–հավաքել, կուտակել), կապերի համակարգ, որտեղ ատոմներից առնվազն մեկը հարևան 2 ատոմներին միացած է կրկնակի կապերով, օր.՝ >C=C=C<: Կ. կ–ով միացությունները քիմիապես շատ ակտիվ են:

ԿՈՒՅԱԲԱ, (Cuiabá), ք. Բրազիլիայում: Մատուգրոսու նահանգ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 570 հզ. (2013): Ունի համալսարան:

ԿՈՒՅԲԻՇԵՎ, Նիկոլայ Վլադիմիրովիչ (1893–1938), կորպուսի հրամ. (1936): Վ. Վ. *Կույբիշևի* եղբայրը: Ռուսաստանի 1917–1922-ի քաղաքաց. պատերազմի ժամանակ՝ բրիգադի հրամ. և Հվ. ճակատի դիվիզիայի պետ: 1925–26-ին՝ Թուրքեստանյան ճակատի հրամ-ի օգնական, հետագայում՝ Սիբիրի և Անդրկովկասի ՋՕ-ների հրամ.: Անհիմն բռնադատվել է, գնդակահարվել:

ԿՈՒՅԲԻՇԵՎ, Վալերիան Վլադիմիրովիչ (1888–1935), խորհրդ. կուս. և պետ. գործիչ: Ն. Վ. *Կույբիշևի* եղբայրը: 1926–30-ին՝ ԽՍՀՄ ԺՏԽ նախագահ: 1930-ից՝ ԽՍՀՄ Պետպլանի, 1934-ից՝ Խորհրդ. վերահսկողության հանձնաժողովի նախագահ, ԽՍՀՄ ԺԿԽ և ԱՊԽ նախագահի 1-ին տեղակալ:

ԿՈՒՅԲԻՇԵՎԻ ՋՐԱՄԲԱՐ, ՌԴ–ում՝ Վոլգա գետի միջին հոսանքում: Կազմավորվել է Ժիգուլյովյան ջրէկի ամբարտակով: Ջրալցումը՝ 1955–57-ին: Մակերեսը՝ 5900 *կմ*^{2}, ջրի ծավալը՝ 58 *կմ*^{3}, երկ.՝ 650 *կմ*, առլզն լայն.՝ 27 *կմ*: Նավարկելի է: Ափին են Ուլյանովսկ, Տոլյատի ք–ներն:

ԿՈՒՅՈ (լատ.՝ Virgo), Կենդանաշրջանի համաստեղություն՝ Ագռավ, Թաս, Առյուծ, Վերոնիկայի վարսեր, Եզնարած, Օձ, Կշեռք, Հիդրա համաստեղությունների միջև: Երկնոլորտի հասարակածով բաժանվում է գրեթե 2 հավասար մասերի: Ամենապայծառ աստղը՝ *Սպիկան* (հայկ. անվանումը՝ Հասկ), առաջին աստղ. մեծության է: Կ–ի համաստեղությունում է աշնան. գիշերահավասարի կետը:

ԿՈՒՅՈՒԻ ԱՇՏԱՐԱԿ, ճարտ. հուշարձան Բաքվում (XII դ., ճարտ.՝ Մասուդ): Զանգվածեղ, գլանաձև ծավալով (ներսում՝ 8–հարկանի, բարձր.՝ 27 *մ*), արլ–ում՝ վիթխարի ելուստով կրաքարե կառույց: Ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխ. ժառանգության ցանկում:

ԿՈՒՅՐ ԱՂԻ, կույր մակաճ՝ մարդու և կաթնասունների հաստ աղիի սկզբնամասում՝ աջ զստափոսում: Պարկաձև է, երկ.՝ 5–8 *սմ*: Ունի որդանման ելուն (ապենդիքս):

ԿՈՒՅՐ ՕԶԵՐ (Typhlopidae), **կույր օձիկներ**, թեփուկավորների կարգի օձերի ենթակարգի ընտանիք (խոնավասեր մանր օձերի շուրջ 6 ցեղի 233 տեսակ): Ստորգետնյա կյանք են վարում: ՀՀ-ում տարածված է որդանման կույր օձը: Մնվում են հիմնականում մրջյունների և տերմիտների ձվերով, թրթուրներով, հարսնյակներով, երբեմն՝ նաև հասուն ձվերով: Ապրում են փխրուն հողերում:

ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է 1963-ին Երևանում՝ 1956-ին ստեղծված տպարանից հրտչ. մասի առանձնացումով: Տպարանի և հրտչ-յան հիմնադիր և գլխ. խմբ.՝ Ալբերտ *Մուշեղյան*, տնօրեն՝ Թելման Բոյաջյան 1965-ից: Բրայլի այբուբենով հրատարակում է գեղ., քաղ., գիտահանրամատչելի գրկ., դասագրքեր, նոտաներ, ուռուցիկ քարտեզներ, նաև կույրերի միավորման վարչության «Բյուլետեն» (1958–ից) պարբ–ը, 1963-ից՝ «Արձագանք» շաբաթաթերթը և «Գրական հանդես» ամսագիրը:

ԿՈՒՆ (Kun) Բելա (1886–1938), հունգար քաղ. գործիչ: Հունգարիայի կոմկուսի կազմակերպիչներից (1918) և ղեկ–ներից: 1919-ին՝ Հունգարիայի Խորհրդ. Հանրապետության (ՀԽՀ) արտգործժողկոմ և ռազմժողկոմ: 1920-ից՝ Ռուսաստանում: Բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ԿՈՒՆ (Kuhn) Թոմաս (1922–1996), ամերիկացի փիլ. և գիտ-յան պատմաբան: Առաջադրել է գիտ. հեղ-յունների հայեցակարգ՝ որպես հարացույցների (պարադիգմա)՝ ելակետ. հասկացութային սխեմաների, խնդիրների դրման միջոցների ու հետազոտ. մեթոդների հերթափոխ: Քննադատել է գիտ-յան նորպոզիտիվիստ. մեկնաբանությունը:

ԿՈՒՆ Նիկոլայ Ալբերտովիչ (1877–1940), ռուս պատմաբան, գրող, մանկավարժ: Հեղինակ է հանրահայտ «Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները» (1922) աշխ-յան, որը թարգմանվել և հրատարակվել է բազմաթիվ լեզուներով, նաև հայ. (1956, թարգմ.՝ Լևոն Հախվերդյան):

ԿՈՒՆ (Kuhn) Ռիխարդ (1900–1967), գերմանացի քիմիկոս և կենսաքիմիկոս: Հաստատել է մի շարք բնական նյութերի (այդ թվում՝ մոտ 300 բուս. գունանյութերի) կառուցվածքը և սինթեզել դրանք: Ուսումնասիրել է չհագեցած միացությունների քիմ. կառուցվածքի և ֆիզ. հատկությունների (օպտիկ., մագնիս. և դիէլեկտրիկ.) կապը: Սինթեզել է (1944) մարտ. թունավոր նյութ *զոմանը*: Նոբելյան մրց. (1938):

ԿՈՒՆ ՇԱՆԴԵՆ (1648–1718), չին դրամատուրգ, բանաստեղծ: Հեղինակ է «Հովհար՝ դեղձի ծաղիկներով» (1699) պատմ. դրամայի, «Ծովեր և լճեր» բանաստեղծությունների ժող-ի:

ԿՈՒՆԱԵՎ Ասկար Մինլիահմեդի (1929–1999), ղազախ ֆիզքիմիկոս: Ղազախ. ԽՍՀ ԳԱ ակադ. (1972), նախագահ՝ 1974–86-ին, ՌԳԱ ակադ. (1991, ԽՍՀՄ ԳԱ ակադ.՝ 1981-ից): Դ. Ա. *Կունաևի* եղբայրը: Աշխ-ները վերաբերում են սև և գունավոր լեգիրող մետաղների կիրառությանը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1978, 1984):

ԿՈՒՆԱԵՎ Դինմուհամմեդ Ահմեդի (1912–1993), ղազախ քաղ. և պետ. գործիչ: Ղազախ. ԽՍՀ ԳԱ ակադ. (1952): Սոց. աշխ. հերոս (1972, 1976, 1982): Ա. Մ. *Կունաևի* եղբայրը: 1952–55-ին՝ Ղազախ. ԽՍՀ ԳԱ նախագահ, 1955–60 և 1962–64-ին՝ ՆԽ նախագահ: 1960–62 և 1964–86-ին՝ Ղազախ. ԽՍՀ կոմկուսի ԿԿ 1-ին քարտուղար:

ԿՈՒՆԱՇԻՐ, կղզի Կուրիլ. կղզեխմբում: Տարածքը՝ 1550 *կմ*^{2}, բն.՝ 8 հզ. (2007): Բարձր.՝ մինչև 1819 *մ*: Կան գործող հրաբուխներ (Տյատյա ևն) և ջերմուկներ: Միակ բնակավայրը՝ Յուժնո-Կուրիլսկ: Գործում է *Կուրիլյան արգելոցը:*

ԿՈՒՆԳՈՒՐՅԵՎ Եվգենի Մաքսիմովիչ (1921–2000), ռուս օդաչու: ԽՄ կրկնակի հերոս (1945), ավիացիայի գեն–մայոր (1964): ՀՄՊ-ի ժամանակ եղել է գրոհիչ ավիացիայում, էսկադրիլիայի հրամ., կատարել է 210 մարտ. թռիչքներ:

ԿՈՒՆԴԱԿՃՅԱՆ Հարի (Հարություն) Լյուդվիգ (1930–2014), լուսանկարիչ, ֆոտոթղթակից: 1952-ից աշխատել է ֆրանս. «Լորիան – Lorian», ապա՝ արաբ. «Ժարդիա – Zhardia» թերթերում: 1974-ից հրավիրվել է Նյու Յորք՝ որպես «Աստղիայթեդ Պրես»-ի Մերձ. Արևելքի բաժնի գլխ. խմբ.: Եղել է 20 երկրում, լուսանկարել նրանց ղեկներին, քաղ. և գր–մշակութ. գործիչների:

ԿՈՒՆԴԵՐԱ (Kundera) Միլան (ծ. 1929), չեխ գրող: 1975-ից՝ Ֆրանսիայում: Հեղինակ է «Կատակ» (1967), «Հրաժեշտի վալս» (1971), «Կյանքը՝ ոչ այստեղ» (1973), «Կեցության անտանելի թեթևությունը»

(1984, հայ.՝ 2015), որտեղ պատկերել է 1968-ի «Պրահայի գարուն» ողբերգության մասնակիցների եղեր. ճակատագրերը, «Գիրք ծիծաղի և մոռացումի» (1979), «Անմահություն» (1989) վեպերի, «Վերջին մայիսը» (1961), «Մենախոսություններ» (1965) բանաստեղծությունների ժող-ների, նաև պիեսների, էսսեների: 1990-ից գրում է ֆրանս. («Իսկություն», 1998, «Անգիտություն», 2000, «Չնչինության տոնը», 2013, վեպեր):

ԿՈՒՆԴՏ (Kundt) Ավգուստ Ադոլֆ Էդուարդ Էբերհարդ (1839–1894), գերմանացի ֆիզիկոս: Գերմանիայի ֆիզիկոս-փորձարարների գիտ. դպրոցի հիմնադիրը: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1888): Առաջարկել է պինդ մարմնում և գազերում լույսի արագության չափման եղանակ, հայտնաբերել լույսի անոմալ ցրման օրենքները, որոշել մետաղներում լույսի բեկման ցուցիչը:

ԿՈՒՆԵՆԵ (Cunene), գետ, հիմնականում՝ Անգոլայում: Երկ.՝ 945 *կմ*, ավազանը՝ 100 հզ. *կմ*²: Թափվում է Ատլանտ. օվկ.: Կան սահանքներ, ջրվեժներ, ջրէկ:

ԿՈՒՆԵՈ (Cuneo) Պաոլո (1936–1995), իտալացի ճարտ., արվեստաբան: Ճարտ-յան դ-ր, պրոֆ.: ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (1994): Հռոմի համալսարանում հիմնադրել է Հայկ. միջնադար. ճարտ-յան ուսումնասիրության կենտրոն (1965, S. *Բրեչիա Ֆրատադոկիի* հետ): Հեղինակ է հայկ. ճարտ-յանը վերաբերող աշխ-ների [«Հայկական ճարտարապետությունը IV–XIX դարերում», հ. 1–2, 1988 (ՀՀ ԳԱԱ Թ. Թորամանյանի անվ. մրց.), «Միջնադարյան Հայաստանի ճարտարապետությունը», իտալ., 1968, համահեղ.՝ Է. Կոստա, ևնի, համահեղ.՝ «Անի» (1984), «Ղարաբաղ» (1988) գրքերի:

ԿՈՒՆԵՐՏ (Kunert) Գյունտեր (ծ. 1929), գերմանացի գրող: Մինչև 1979-ը՝ ԳԴԵՀ-ում, այնուհետև՝ ԳԴՀ-ում: Հեղինակ է արդիական թեմաներով «Բաց ելք» (1972) երգիծ., «Փոքրիկ Նոն» (1975), «Նատյուրմորտ» (1983), «Ստվերների վերծանում» (1995) փիլ. բանաստեղծությունների, «Ուշացած մենախոսություններ» (1981), «Հետ դեպի դրախտ» (1984) արձակ գործերի ժող-ների:

ԿՈՒՆԻ (ալ Կունի) Իբրահիմ (ծ. 1948), լիբիացի գրող: Հեղինակ է տուարեգ և արաբ. բանահյուս. թեմաներով «Արեգակի խավարում» (1989), «Ոսկե փոշի» (1990), «Բերան» (1994), «Մոգեր» (1995), «Ծածկագիր» (1999) և այլ վեպերի:

ԿՈՒՆԻԿՈՎ Յեզար Լվովիչ (1909–1943), մայոր (1942): ԽՄ հերոս (1943, հետմահու): 1943-ի փետր-ին ղեկավարել է Միսխակոյի (այժմ՝ Նովոռոսիյսկի արվարձան) հենակետը գրաված և մինչև գլխ. ուժերի հասնելը պահպանած ծով. հետևակի դեսանտ. ջոկատը:

ԿՈՒՆԻՑԻՆ Ալեքսանդր Պետրովիչ (1783–1840), ռուս իրավաբան: Ա. Ս. *Պուշկինի* ուսուցիչը (Ցարսկոյե սելո լիցեյում): Կ-ի «Բնական իրավունք» (մաս 1, 2, 1818, 1820) գիրքն արգելվել է՝ որպես «քրիստոնեության ճշմարտություններին» հակասող:

ԿՈՒՆԼՈՒՆ, լեռն. համակարգ Չինաստանի արմ-ում: Երկ.՝ 2700 *կմ*, լայն.՝ 150–600 *կմ*, բարձր.՝ մինչև 7167 *մ* (Ակսայ-Չին): Կ-ի արլ. մասը ձևավորում է Նանշանը: Գերակշռում են չոր տափաստանները և անապատները: Կան սառցադաշտեր:

ԿՈՒՆԿԵՅՐՈ ՄՈՐԱ (Cunqueiro Mora) Ալվարո (1911–1981), իսպանացի գրող: Գրել է նաև գալիսիերեն: Հեղինակ է «Եղերքերգեր և բանաստեղծություններ» (1940) ժող-ի, «Մեղլինը և ընտանիքը» (1955), «Մարդը, որը նման էր Օրեստին» (1968), «Գիսաստղի տարին» (1974) վեպերի, նաև սյուրռեալիստ. պիեսների:

ԿՈՒՆՄԻՆ, ք. Չինաստանի հվ-արմ-ում, Յուննան պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,1 մլն (2010, արվարձաններով՝ ավելի քան 2,5 մլն): Տրանսպորտ. հանգույց է, ունի օդանավակայան: Զրոսաշրջային և առևտր. կենտրոն է: Գործում է Չինաստանի ԳԱ մասնաճյուղը, կան համալսարաններ:

ԿՈՒՆՅԱԵՎ Ստանիսլավ Յուրևիչ (ծ. 1932), ռուս բանաստեղծ: 1989-ից՝ «Նաշ սովրեմեննիկ» (ռուս.) ամսագրի գլխ. խմբ.: Հեղինակ է «Օղակ» (1962), «Բուքը քաղաք է մտնում» (1966), «Երկար օր» (1978), «Անոթում բոցկլտացող կրակը» (1986), «Ռուսական երազներ» (1990), «Պոեզիա. Ռուսաստանի ճակատագիրը» (2001), «Ռուսաստանի հարազատ որդիներ» (2001), «Հմայված օտարականը» (2012) բանաստեղծությունների և պոեմների ժող-ների, «Ժամանակներ և լեզենդներ» (1990) հրապարակախոս. և քննադատ. հոդվածների ժող-ի, «Սերգեյ Եսենին» (համահեղ., 1995) աշխ-յան:

ՌԽՖՍՀ Մ. Գորկու (1987), Տ. Ս. Ակսակովի (2008) և Ն. Ս. Լեսկովի անվ. (2012), Ռուսաստանի գր. մեծ (2001) մրց-ներ:

ԿՈՒՆՉԻՆԱՍ (Kunčinas) Յուրգիս (1947–2002), լիտվացի գրող: Հեղինակ է խորհրդանշ. և երևակայական տարրերով հարուստ «Տուուլա» (1993), «Տեղաշարժվող ռենտգենյան սարքեր: Հիվանդության և սիրո պատմություն» (1998) և այլ վեպերի, նաև երգիծ. պատմվածքների, մանկ. բանաստեղծությունների, ակնարկների, էսսեների, պիեսների:

ԿՈՒՆՄԱՆ, ք-նվինգստ Կորեայի Հանրապետությունում՝ Դեղին ծովի Կունսանամ ծոցի ափին: Բն.՝ 278 հզ. (2012):

ԿՈՒՆՏԱ. ՀԱՋԻ Քիշլև (ծ. թ. անհտ–1867), սուֆի շեյխ: Հս. Կովկասում հիմնադրել է Կադիրիի եղբայրության ճյուղը, որը մեծ ազդեցություն է ունեցել այդ շրջանի մահմեդականության վրա: Ռուս. իշխանություններին չհնազանդվելու համար աքսորվել է Նովգորոդի մերձակայք: Հետևորդները պաշտում են Կ. Հ-ին՝ որպես սրբի (վալի) և թաքնված շեյխի (ուվայսի), որի վերադարձին սպասում են դատաստանի օրր:

ԿՈՒՆՑԵՎԻՉ Անատոլի Դեմյանովիչ (1934–2002), ռուս քիմիկոս: ՌԳԱ ակադ. (1987), գեն-լեյտ. (1987): Սոց. աշխ. հերոս (1981): Աշակել է Չեռնոբիլի ԱԷԿ-ի տարածքի ապաակտիվացման հիմն. դրույթները: Լենինյան մրց. (1990):

ԿՈՒՇ (Կաշ, Kusch) Պոլիկարպ (1911–1993), ամերիկացի ֆիզիկոս: Մեծ ճշտությամբ չափել է (1949) էլեկտրոնի մագնիս. մոմենտը: Նոբելյան մրց. (1955):

ԿՈՒՇԻՆԳ (Cushing) Հարվի Ուիլյամս (1869–1939), ամերիկացի բժիշկ, նյարդավիրաբուժության հիմնադիրներից, ուղեղի վիրաբուժության առաջատարը: Նկարագրել է հիպոֆիզի ուռուցքով պայմանավորված ներզատ. խանգարման ձևը (բազոֆիլային ադենոմա):

ԿՈՒՇՆԵՐ Ալեքսանդր Սեմյոնովիչ (ծ. 1936), հրեա ռուսագիր բանաստեղծ: 1992-ից՝ «Բիբլիոտեկի պոետա» (ռուս.) ամսագրի գլխ. խմբ.: Հեղինակ է «Գիշերային պարեկ» (1966), «Զայն» (1978), «Հենք» (1981), «Կանաչ ցանկապատ» (1988), «Թռչող ածու» (2000), «Ամպերն ընտրում են անապատը» (2008), «Կավճով և ածխով» (2010), ինչպես նաև պոեզիայի մասին էսսեների ժող-ների:

ՌԴ Պետ. (1995), Ա. Ս. Պուշկինի (2001), Կ. Ի. Չուկովսկու (2007) անվ. մրց-ներ:

ԿՈՒՇՆԻՐ (Kushnir) Ալլա Շուլիմովնա (ծ. 1941), հրեա շախմատիստուհի: ԽՍՀՄ չեմպիոն (1970), միջազգ. գրոսմայստեր (1976): Աշխարհի առաջնության համար Ն. *Գափրինդաշվիլու* հետ 3 մրցախաղի մասնակից (1965, 1969, 1972): Համաշխ. շախմատի օլիմպիադայի (1969, 1972, ԽՍՀՄ հավաքականի կազմում) և Եվրոպայի շախմատիստուհիների գավաթի (1973) հաղթող: 1973-ից՝ Իսրայելում:

ԿՈՒՇԱՆ (Kučan) Միլան (ծ. 1941), Սլովենիայի 1-ին նախագահը՝ 1992–2002-ին: 1990-ից՝ Սլովենիայի Հանրապետության խորհրդարանի (սկուպշչինա) նախագահ: 1991-ին լուծել է Հարավսլավիայի կազմից Սլովենիայի խաղաղ ճանապարհով դուրս գալու հարցը: 2004-ից՝ *Սադրիդյան ակումբի* անդամ:

ԿՈՒՇԵՐՈՎ Միխայիլ Գրիգորևիչ (1850–1911), ռուս քիմիկոս-օրգանիկ: Բացահայտել է սնդիկի աղերի ներկայությամբ ացետիլենի և նրա ածանցյալների հիդրատացմամբ կարբոնիլային միացությունների առաջացման ռեակցիան (1881, Կուչերովի ռեակցիա):

ԿՈՒՉԻՅԱԿ Պավել Վասիլևիչ (1897–1943), ալթայցի գրող, ալթայական գրկ-յան հիմնադիրներից: Հեղինակ է ալթայցի ժողդ-ի ճակատագրի մասին պոեմների, պիեսների, պատմվածքների, բանաստեղծությունների:

ԿՈՒՉԻՆԳ (Kuching), ք. Մալայզիայում, խոշորագույնը Կալիմանտան կղզում, Սարավակ նահգ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 658,6 հզ. (2010): Ծով. նվինգստ է, ունի օդանավակայան: Կա նավանորոգարան: Վերամշակում են բնական կաուչուկ և ձուկ:

ԿՈՒՉՄԱ Լեոնիդ Դանիլովիչ (ծ. 1938), ուկրաինացի պետ. և քաղ. գործիչ: Ուկրաինայի նախագահ՝ 1994–2005-ին, վարչապետ՝ 1992–93-ին: 2002-ի հրամանագրով ընդունել է «ՆԱՏՕ-ի հետ Ուկրաինայի հարաբերությունների մասին» որոշում, որով հայտարարվել է Ուկրաինայի այդ դաշինք մտնելու նպատակը: Կ-ի օրոք ընդունվել է երկրի նոր սահմանադրությունը:

ԿՈՒՉՈՒՄ (Կուչում Բահադուր-խան, մոտ 1540–մոտ 1599), *Սիբիրի խանության* խան (1563-ից, ինքնուրույն՝ 1568-ից): *Մուրթազա* սուլթանի որդին: 1582-ին *Երմակ Տիմոֆեևիչի* ջոկատը ջախջախել է Կ-ին, գրավել խանության մայրաքաղաքը: 1585-ին Կ. անսպասելիորեն հարձակվել է Երմակի ջոկատի վրա և ոչնչացրել այն: 1598-ին պարտվել է ռուս. զորքերին (հրամ.՝ Ա. Մ. Վոյեկով), փախել է կալմիկների մոտ, որոնք էլ հավանաբար սպանել են նրան:

ԿՈՒՊԱԼԱ Յանկա (Իվան Դոմինիկովիչ Լուցևիչ, 1882–1942), բելառուս բանաստեղծ: Բել. ԽՍՀ ժող. բանաստեղծ (1925): Բել. ԽՍՀ (1928) և Ուկր. ԽՍՀ (1929) ԳԱ-ների ակադ.: Բելառուս. նոր գրկ-յան հիմնադիրը (Յ. Կորասի հետ): Հեղինակ է «Սրինգ» (1908), «Տավղահարը» (1910), «Կյանքի ճանապարհով» (1913), «Սրտաբուխ ձայնով» (1940) բանաստեղծությունների ժող-ների, պոեմների, պիեսների և այլ գործերի:

«Տեղացիները» (1922) կատակերգությունը: Հայ. է հրատարակվել «Հատընտիր» (1951) ժող–ր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941):

ԿՈՒՊԱԼԱ, ամառ. արևադարձի ժող. տոն (Իվան Կուպալա անունով, որը Հովհաննես Մկրտչի սլավոն. նմանակն է. հունիսի 24–ի գիշերը եկեղեցին տոնում է վերջինիս ծնունդը): Ուղեկցվում է ծաղիկների հավաքմամբ, ջրով և կրակով կատարվող ծեսերով:

ԿՈՒՊԱԼՈՎ Պյոտր Ստեպանովիչ (1888–1964), ռուս ֆիզիոլոգ: ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1946): ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1943): Մշակել է իրավիճակ. պայման. ռեֆլեքսների մեթոդիկա:

ԿՈՒՊԵՐ (Couper) Արչիբալդ Սքոթ (1831–1892), շոտլանդացի քիմիկոս: Օրգ. միացությունների քիմ. կառուցվածքի տեսության ստեղծողներից: Շարադրել է (1858) ատոմականության (արժեքականության) տեսության կառուցման մեթոդաբան. սկզբունքները: Առաջինն է առաջարկել քիմ. բանաձևերի գրառման տարբերակ՝ արժեքական գծիկների կիրառումով:

ԿՈՒՊԵՐ Էմիլ Ալբերտովիչ (1877–1960), հրեա դիրիժոր: 1910–19-ին՝ Մոսկվայի Մեծ (1935–45-ին՝ խմբավար), 1921–26-ին՝ Լենինգրադի Փոքր օպեր. թատրոնների դիրիժոր, 1919-ից՝ Պետրոգրադի ՕԲԹ և ֆիլհարմոնիայի գլխ. դիրիժոր: 1924-ից աշխատել է նաև արտերկրում (Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերա» ևն):

ԿՈՒՊԵՐ Լեոն (ծ. 1930), ամերիկացի ֆիզիկոս-տեսաբան: Կանխագուշակել է (1956) հետագայում իր անունով կոչված էֆեկտ՝ ***Կուպերի էֆեկտը***: Գերհաղորդականության միկրոսկոպիկ տեսության հեղինակներից է (1957): Նոբելյան մրց. (1972, Ջ. *Բարդինի* և Ջ. *Շրիֆերի* հետ):

ԿՈՒՊԵՐԻ ԷՖԵԿՏ, մետաղում ազատ էլեկտրոնների միավորումը զույգերով **(կուպերյան զույգեր)**՝ նրանց ձգողության հետևանքով, առաջանում է բյուրեղ. ցանցի իոնների տատանումներից: Հանգեցնում է ***գերհաղորդականության*** առաջացմանը: Կանխագուշակել է Լ. *Կուպերը* 1956-ին:

ԿՈՒՊԵՐՄԱՆ (Cooperman) Իսեր Իոսիֆովիչ (1922–2006), հրեա մարզիկ (շաշկիստ): ԽՍՀՄ ս. վ. վ. (1956): Շաշկու միջազգ. գրոսմայստեր (1958): Աշխարհի (1958–67), ԽՍՀՄ բազմակի չեմպիոն (1945, 1947–48՝ ռուս. շաշկու, 1954–56, 1962, 1967՝ հարյուրվանդականոց շաշկու):

ԿՈՒՊԻԴՈՆ (լատ.՝ cupidon, սեռ. հոլ.՝ cupidonis – ուժեղ կիրք), սիրո աստվածությունը հռոմ. դից-յան մեջ, սիրային տենչանքի մարմնացում: Համապատասխանում է Ամուրին կամ հունս. Էրոտին: Պատկերվել է չարաճճի տղայի կերպարանքով:

ԿՈՒՊԿԱ (Kupka) Ֆրանտիշեկ (1871–1957), չեխ գեղանկարիչ, գրաֆիկ: Աբստրակցիոնիզմի հիմնադիրներից: Ճկուն գծերի ռիթմիկ կրկնության և խոշոր գունավոր բծերի ներդաշնակ զուգորդությամբ ստեղծել է նուրբ դեկորատիվ կոմպոզիցիաներ («Հորիզոնական և ուղղահայաց պլաններ», 1913–28, ևն): Հեղինակ է «Ստեղծագործելը պլաստիկ արվեստներում» (1911, հրտ.՝ 1923) աշխ-յան:

ԿՈՒՊՄԱՆՍ (Koopmans) Տյալինգ (1910–1985), ամերիկացի տնտեսագետ: Հետազոտությունները վերաբերում են տնտ. ցիկլի, գծային ծրագրավորման, գործառն. վերլուծության տեսությանը: Նոբելյան մրց. (1975, Լ. Վ. ***Կանտորովիչի*** հետ):

ԿՈՒՊՈՆ (ֆրանս.՝ coupon – հատելի կտրոն), **արժեկտրոն**, 1. արժեթղթի մաս (բաժնետոմսեր, պարտատոմսեր), որը ներկայացվում է տոկոս կամ շահութաբաժին ստանալու համար: 2. Մի շարք հանրապետություններում անցում. դրամ. միավոր՝ ԽՍՀՄ փլուզման շրջանում:

ԿՈՒՊՉԵՆԿՈ Իրինա Պետրովնա (ծ. 1948), ռուս. դերասանուհի: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1989): Վ. Ս. ***Լանովոյի*** կինը: 1970-ից՝նկարահանվել է կինոյում («Ազնվականական բույն», «Քեռի Վանյա», «Ռոմանս սիրահարների մասին», «Ուրիշի՝նամակները», «Տարօրինակ կինը», «Առանց վկաների», «Տունը քարի վրա», «Գիշերը լուսավոր է» ևն): 1970-ից՝ Մոսկվայի Ե. Վախթանգովի անվ. թատրոնի դերասանուհի (Դոլլի՝ «Աննա Կարենինա»՝ ըստ Լ. Ն. Տոլստոյի, Կլոդիա՝ «Մարտ ամսվա իդոսը»՝ ըստ Թ. Ուայլդերի, ևն):

Համ.ԼԿԵՄ (1981), ՌԴ Պետ. (2001), «Նիկա» (1988, 2016), «Ոսկե արծիվ» (2008) մրց-ներ:

ԿՈՒՊՐ, **ձյութ**, հեղուկ նյութ. ստացվում է պինդ վառելանյութերի (քարածուխ, փայտ, տորֆ, թերթաքարեր ևն) չոր թորումից:

ԿՈՒՊՐԱՎԻՉՅՈՒՍ (Kuprėvičius) Հեդրյուս (ծ. 1944), լիտվացի կոմպոզիտոր: 1930–1986-ին ղեկավարել է «Արգո» երաժշտ. խումբը: Հեղինակ է «Այնտեղ՝ներսում» (1977), «Այս ողջ աշխարհի հետ» (1980) օպերաների, «Հրշեջները» (1975) մյուզիքլի, «Աշխատանք և հաց» (1979) ռոք օրատորիայի, սիմֆոնիայի (1981), կամերգործիք., նվագախմբային և այլ երկերի:

Համ.ԼԿԵՄ մրց. (1976):

ԿՈՒՊՐԵՎԻՉ Վասիլի Թեոֆիլովիչ (1897–1969), բելոռուս բուսաբան: Հող. ֆերմենտաբանության հիմնադիրը: Բել. ԽՍՀ ԳԱ ակադ. և նախագահը (1952-ից): ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1953): Սոց. աշխ. հերոս (1969): Աշխ-ները վերաբերում են հիվանդ բույսերի ֆիզիոլոգիային, մնկերի կարգաբանությանը, հող. ֆերմենտաբանությանը:

ԿՈՒՊՐԻՅԱՆՈՎ (Կուպրեյանով) Իվան Անտոնովիչ (1800–1857), ռուս ռազմ. գործիչ, փոխծովակալ (1852): Ռուս. Ամերիկայի գլխ. կառավարիչը (1834–40): Հատուկ ուշադրություն է դարձրել տեղաբնիկների հետ ապրանքափոխանակության զարգացմանը:

ԿՈՒՊՐԻՅԱՆՈՎ Պյոտր Անդրեևիչ (1893–1963), ռուս վիրաբույժ: Սրտավիրաբույժների գիտ. դպրոցի հիմնադիրը: ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1944): Սոց. աշխ. հերոս (1963): Բժշկ. ծառայության գնդ-լեյտ. (1945): Սրտի արատների վիրաբուժ. բուժման առաջնեկներից:

ԿՈՒՊՐԻՆ Ալեքսանդր Իվանովիչ (1870–1938), ռուս գրող: Քննադատ. ռեալիզմի ներկայացուցիչ: Պատմվածքի վարպետ («Կրկեսում», 1902, «Նռնաքարե ապրանջան», 1911, ևն): «Մենամարտ» (1905, հայ.՝ 1960) վեպում պատկերել է ցար. բանակի սպայական կազմի հոգեկան անկումը: Հեղինակ է նաև «Մոլոք» (1896), «Յամա» (1909–15, հայ.՝ 1975) վեպերի, «Օլեսյա» (1898) և այլ վիպակների, ակնարկների: 1919–37-ին՝ վտարանդի Ֆրանսիայում: Հայ. հրատարակվել է «Պատմվածքներ» (1956, 1968) ժող–ր:

ԿՈՒՊՐԻՆ Ալեքսանդր Վասիլևիչ (1880–1960), ռուս նկարիչ: ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի թղթ. անդամ (1954): ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1956): «Ագուռի վալետ» նկարիչների ընկ-յան հիմնադիր-անդամ: Ստեղծել է դեկորատիվ-վերլուծ. նատյուրմորտներ («Նատյուրմորտ արձանիկներով», 1919, ևն), ավելի ուշ՝ ընանկարներ («Բեսապյան հովիտը», 1937, ևն):

ԿՈՒՊՖԵՐ (Kupfer) Ադոլֆ Յակովլևիչ (1799–1865), ռուս. ֆիզքիմիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1828): Աշխ-ները վերաբերում են միներալագիտ-յանը, բյուրեղագիտ-յանը, ֆիզիկային: Կազմակերպել է մագնիս. և օդերևութաբան. դիտարկումներ: Իր հիմնադրած ֆիզ. աստղադիտարանի առաջին տնօրենն (1849–ից):

ԿՈՒՌԼԻՆ Յուրի Վլադիմիրովիչ (ծ. 1929), ռուս օդաչու: ԽՍՀՄ վաստ. փորձարկող օդաչու (1972): ԽՄ հերոս (1966): Փորձարկել է Օ. Կ. ***Անտոնովի*** ՀԿԲ-ի ինքնաթիռները, այդ թվում՝ Ան–22-ը («Անթեյ»):

ԿՈՒՌԼՈՎ Պավել Գրիգորևիչ (1860–1923), ռուս. պետ. գործիչ, շտաբմայստեր (ախոռապետ) (1907), գնդ–լեյտ. (1910): 1905–06-ին՝ Մինսկի նահանգապետ: 1905-ի հոկտ-ին Կ-ի հրամանով, առանց նախազգուշացման, Մինսկում կրակ են բացել բազմահազարանոց ցույցի մասնակիցների վրա: Մեղադրվել է Պ. Ա. ***Ստոլիպինի*** սպանության (1911) համար (Նիկոլայ II-ի կարգադրությամբ Կ-ի գործը կարճվել է): 1918-ից՝ Գերմանիայում: Հեղինակ է «Միապետական Ռուսաստանի վախճանը» (1923) հուշագրության:

ԿՈՒՌԼՈՎԻՉ Ալեքսանդր Նիկոլաևիչ (ծ. 1961), բելառուս մարզիկ (ծանրամարտ): ԽՍՀՄ ս. վ. վ. (1987): Օլիմպ. խաղերի (1988, 1992), աշխարհի (1987, 1989, 1991, 1994), Եվրոպայի (1988, 1990) չեմպիոն: Սահմանել է 12 ռեկորդ՝ գերծանր քաշ. կարգում:

ԿՈՒՐՆԱԿՈՎ Նիկոլայ Սեմյոնովիչ (1860–1941), ռուս ֆիզքիմիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1913): Ֆիզքիմ. վերլուծության հեղինակներից է և գիտ. դպրոցի հիմնադիրը: Զևակերպել է դալթոնիդների և բերթոլիդների մասին պատկերացումները: Կազմակերպել է ռուս. մետաղագործության և աղամշակման արտադր-յունները, մի շարք ԳՀԻ-ներ: Լենինյան (1928), ԽՍՀՄ Պետ. (1941) մրց-ներ:

ԿՈՒՐՆԱՆ (Cournand) Անդրե Ֆրեդերիկ (1895–1988), ֆրանսիացի բժիշկ: 1930-ից՝ ԱՄՆ-ում: Սրտի ձողարկման (կաթետերացում) ախտորոշիչ մեթոդի հեղինակներից: Նոբելյան մրց. (1956, Դ. ***Ռիչարդսի*** և Վ. ***Ֆորսմանի*** հետ):

ԿՈՒՐՈՅԱՆ Ռազմիկ Հակոբի (1938–2001), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դ–ր (1985), պրոֆ. (1988): Աշխ-ները վերաբերում են ազոտ պարունակող սպիրոտարացիկլային միացությունների՝ ազասպիրանների սինթեզին: Համահեղինակ է 2 պատրաստուկների, որոնցից մեկը («Սպիրատին» պայման. անունով) հակաընկճում., հակապսիխոզ. միջոց է:

ԿՈՒՌ-Ք, մարդակերպ արձան, որը հեթանոսները պաշտել են որպես աստծու: Փխր. իմաստով՝ պաշտամունքի առարկա:

ԿՈՒՍԱԽԱՂՈՂ, (Amelopsis), **վայրի խաղող, կույսորթ**, խաղողազգիների ընտանիքի ծառանման լիանների ցեղ: Հայտնի է 15 տեսակ, Հայաստանում հանդիպում է միայն բուսաբ. այգիներում և դենդրոպարկերում: Ունի պարտեզային ձևեր ու այլատեսակներ:

ԿՈՒՍԱՆՇԱՂԻԿ (Vinca), շնամեռուկազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսե-

րի ցեղ: Հայտնի է մոտ 7 տեսակ, ՀՀ-ում՝ 1 (խոտային Կ.)՝ Լոռու, Տավուշի, Սյունիքի մարզերում՝ անտառեզրերին, կրային հողերում: Պարունակում է ալկալոիդներ: Դեղազարդիչ է:

ԿՈՒՍԱԾՆՈՒԹՅՈՒՆ, **պարթենոգենեզ** (< հուն. parthenos – կույս և ...*գենեզ*), կուսածին բազմացում, սեռ. բազմացման ձև. ձվաբջջի զարգացումն առանց բեղմնավորման: Բնորոշ է անողնաշար մի շարք կենդանիների (դաֆնիա, անվակիրներ, լվիճներ, մեղուներ ևն) և բազմաթիվ սերմնավոր ու սպորավոր բույսերի: Կ-յան առանձնահատուկ ձևեր են գինոգենեզը, անդրոգենեզը, նաև պեդոգենեզը:

ԿՈՒՍԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆ, քրիստ. ճգնավորության ձև. սկզբնավորվել է III–IV դդ-ում: Աշխարհիկ կյանքից վանականների հրաժարումը: Առաջին վանականները եղել են ճգնավորներ (քարոզիչ Անտոնիոս Մեծ), որոնք բնակվել են Եգիպտոսի, Սիրիայի, Պաղեստինի անապատներում: Կաթոլիկ եկեղեցում միջին դարերում և նոր ժամանակներում ձևավորվել են մի շարք վան. ուխտեր և միաբանություններ (դոմինկյաններ, ֆրանցիսկյաններ, ճիզվիտներ ևն): Ուղղափառության և կաթոլիկության մեջ լայնորեն տարածվել է նաև կանանց Կ.: Կ. եղել է նաև հին կրոններում՝ բուդդայականության, դաոսականության մեջ, ջայնիզմում: Հայ եկեղեցում Կ. մուտք գործել տիրող սովորության համաձայն և հաստատվել ավանդությամբ: Գրիգոր Ա Լուսավորչից (302–325) մինչև Սահակ Ա Պարթևը (387–436) Հայոց կաթողիկոսները եղել են ամուսնացյալ: V դ–ից սկսած՝ Հայ եկեղեցում վարչ. և քարոզչ. իշխանությունը վերապահվել է բացառապես կուսակրոններին, բարձրաստիճան հոգևորականությունը (կաթողիկոս, եպս., վրդ.) ընտրվում է կուսակրոն քահն-ներից:

ԿՈՒՍԱՆԱՅ ՎԱՆՔ Անիի, XII–XIII դդ–ի ճարտ. համալիր Ախուրյանի կիրճի լանջին: Ընդգրկել է Սբ Հռիփսիմե եկեղեցին և օժանդակ շինություններ: Պահպանվել են թաղակապ սրահի մնացորդներ:

ԿՈՒՍԱՆՈՑ, **կուսաստան**, վանքերում քրիստոնյա միանձնուհիների կրոն. համայնք, միաբանություն: Ղեկավարել է մայրապետը, որն ունեցել է վանահորը գրեթե հավասար լիազորություններ: Կ. առաջացել է III–IV դդ–ում՝ աշխարհիկ կյանքը մերժելու, ճգնակեցությամբ և աղոթքներով Աստծուն մերձենալու նշանաբանով: Ըստ ավանդության՝ Հայաստանում 1-ին Կ. հիմնադրել է *Բարդուղիմեոս* առաքյալը: Կ-ներ են կառուցվել Ներսես Ա Մեծ կաթողիկոսի օրոք, որոնք վերացրել է Պապ թագավորը:

ԿՈՒՍԱՔ (Cusack) Էլեն Դիմֆնա (1902–1981), ավստրալիացի գրող: Հեղինակ է «Երկինքը կարմիր է առավոտյան» (1935) ռոմանտիկ. դրամայի, «Յունգֆրաու» (1936) հակաբուրժ. թեմայով վեպի, «Խաղաղօվկիանոսյան դրախտ» (1956) և այլ պիեսների, «Արևն աքսորական» (1955), «Մև կայծակ» (1964), «Խանձված ծառը» (1969) վեպերի, նաև պատմվածքների:

ԿՈՒՍԵՎԻՑԿԻ Սերգեյ Ալեքսանդրովիչ (1874–1951), հրես դիրիժոր, կոնտրաբասահար: Մոսկվայում հիմնադրել է սիմֆ. նվագախումբ (1908), երաժշտ. հրտչ-յուն (1909): Կազմակերպել է սիմֆ. համերգների շարք (1921–28, Փարիզ), ղեկավարել Բոստոնի (ԱՄՆ) ֆիլհարմոնիկ նվագախումբը (1924–49): Հեղինակ է կոնտրաբասի և նվագախմբի համար երաժշտ. գործերի:

ԿՈՒՍԻԿՅԱՆ Կարապետ Բարսեղի (1864–1915), գրականագետ, մանկավարժ: Հովսեփ *Կուսիկյանի* հայրը: 1910–12-ին՝ «*Գարուն*» գր. ալմանախի հրտ-ներից: Հեղինակ է «Գրական դէմքեր» (1912) աշխ-յան: Կազմել է նաև դասագրքեր («Հատիկներ», 1915, Ա. Ծատուրյանի հետ, ևն):

ԿՈՒՍԻԿՅԱՆ Հովսեփ Կարապետի (1890–1964), լեզվաբան, բանասեր: Բանասիր. գիտ. դ–ր (1961): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1962): Կարապետ *Կուսիկյանի* որդին: Հեղինակ է «Ժամանակակից գրական հայերենի քերականություն» (1950), «Ակնարկներ գրական հայերենի պատմական շարահյուսության» (1959), «Գրական հայերենի բառային կազմի փոփոխությունները խորհրդային շրջանում» (1964, բոլորը՝ ռուս.) աշխ-ների: Ռուս. է թարգմանել Րաֆֆու «Սամվել» վեպը (1958):

ԿՈՒՍԻԿՅԱՆՑ Գրիգորի Ֆիլիպի (1915–2002), բռնցքամարտի մարզիչ, մրցավար: ԽՍՀՄ վաստ. մարզիչ, համամիութ. կարգի մրցավար: 1961–67-ին՝ ԽՍՀՄ բռնցքամարտի հավաքականի մարզչ. շտաբի անդամ:

ԿՈՒՍԻՐՈ, ք–նվինգստն Շապոնիայի Հոկայդո կղզում: Բն.՝ 179 հզ. (2014):

ԿՈՒՍԿՈ (Cuzco), ք. Պերուի հվ–արմ–ում, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 435,1 հզ. (2013): Ինկերի հնագույն մայրաքաղաքն է:

ԿՈՒՍԿՈՎԻՄ, գետ Ալյասկայում: Երկ.՝ 1300 *կմ*, ավազանը՝ 123 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1840 *մ*^{3}/*վ*: Թափվում է Բերինգի ծով: Նավարկելի է (800 *կմ*):

ԿՈՒՍԿՈՒՄՆԵՐ, մագլցող պարկավորների ընտանիքի կաթնասունների ցեղ: Մարմնի երկ.՝ 30–65, պոչինը՝ 26–60 *սմ*: Հայտնի է 13 տեսակ՝ Ավստրալիայի հս. ծայրամասում, Նոր Գվինեայի մերձակա կղզիների անտառներում և թփուտներում: 3 տեսակ գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ԿՈՒՍՄԱՈՒԼ (Kussmaul) Ադոլֆ (1822–1902), գերմանացի կլինիցիստ: 1867–68-ին գործնական կլինիկայում ներդրել է կերակրափողի և ստամոքսի ձողարկումը: Նկարագրել է հանգուցավոր պերիարտերիտը (1866, Ռ. *Մայերի* հետ՝ Կ–Մայերի հիվանդություն), գլխուղեղի ախտահարման ժամանակ ախտաբան. շնչառության մի տեսակ (1873, Կ-ի շնչառություն)՝ գիտակցության խանգարումով:

ԿՈՒՍՆԵՎԻՉ (Kusnievicz) Անջեյ (1904–1993), լեհ գրող: «Գրական ամսագրի» (լեհ., 1953-ից) գլխ. խմբ.: Դիմադրության շարժման մասնակից: Եղել է ֆաշիստ. համակենտրոնացման ճամբարում: «Կապշառակերություն» (1961) վեպում պատկերել է լեհերի գործողությունները Ֆրանսիայում ԵՀՊ-ի ժամանակ: Հեղինակ է նաև «Էրոիկա» (1993) վեպի, «Կորնթոսի ճանապարհին» (1964), «Երկու Սիցիլիաների թագավորը» (1970), «Գոտիներ» (1971), «Անկշռության վիճակ» (1973) պատմավեպերի:

Լ.Եհաստանի Պետ. (1974), Յ. Պարանդովսկու անվ. (1991) մրց-ներ:

ԿՈՒՍՈՉԻՆՍԿԻ (Kusociński) Յանուշ (1907–1940), լեհ մարզիկ (աթլետ): Օլիմպ. խաղերի չեմպիոն (1938)՝ 10 000 *մ* վազքում: Մահապատժի են ենթարկել գերմանացի զավթիչները: Անցկացվում են Կ–ու հուշամրցաշարեր (1954–ից):

ԿՈՒՍՏԱՆԱՅ (1893–95-ին՝ Նիկոլաևսկ), ք. Ղազախստանում՝ Տորոլ գետի ափին, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 226,4 հզ. (2015):

ԿՈՒՍՏԱՆԱՅԻ ՁԻԵՐԻ ՅԵՂ, հեծկան, բուծվել է XX դ–ի սկզբին և բազմացվում է Ղազախստանում: Խոշոր զանգվածեղ և դիմացկուն կենդանիներ են:

ԿՈՒՍՏԱՆԱՅԻ ՄԱՐԶ, վտմ Ղազախստանում: Տարածքը՝ 196 հզ. *կմ*^{2}, բն.՝ 881 հզ. (2014): Վարչ. կենտրոնը՝ *Կուստանայ*:

ԿՈՒՍՏՈ (Cousteau) Ժակ Իվ (1910–1998), ֆրանսիացի օվկիանոսագետ, ճանապարհորդ, կինեմատոգրաֆիստ: Ստորջրյա հետազոտությունների և նկարահանումների նախաձեռնողը: 1952-ին՝ «Կալիպսո», 1985-ին «Ալկիոնա» նավերով կատարել է բազմաթիվ հետազոտություններ Ատլանտ., Հնդ. օվկ–ներում, Կարմիր, Սև, Արաբ. ծովերում և Պարսից ծոցում: Ստեղծել է փակ տիպի թթվածնասարք՝ «խորասուզվող ափսե», կատարելագործել *աքվալանգը*: Նկարահանել է ստորջրյա ֆիլմեր, մասնավորապես՝ «Կոստոյի ստորջրյա ոդիսականը» բազմասերիանոց ֆիլմը: Մոնակոյի օվկիանոսագիտ. թանգարանի տնօրեն (1957–ից):

ԿՈՒՍՏՈԴԻԵՎ Բորիս Միխայլովիչ (1878–1927), ռուս. գեղանկարիչ, գրաֆիկ, բեմանկարիչ: Ստեղծել է ռուս. գյուղ. և գավառ. կենցաղի գունեղ պատկերներ («Տոնավաճառներ», շարք): Գործերում նկատելի են *լուբոկի* գեղանկարչության («Վաճառականի կինը», 1915, ևն) հնարքների ինքնատիպ մեկնաբանությունները:

ԿՈՒՍՏՈՒ (Coustou), ֆրանսիացի քանդ. եղբայրներ՝ **Նիկոլա Կ.** (1658–1733) և **Գիյոմ Կ.** (1677–1746): Ստեղծել են դեկորատիվ քանդակներ Վերսալի Մաուլիի պալատների և այգիների համար (Գիյոմ Կ–ի՝ ձիեր սանձահարողների 2 քանդակախումբ, Ելիսեյան դաշտեր, Փարիզ, 1739–45, այժմ՝ Լուվրում. տեղադրված են ընդօրինակություններ):

ԿՈՒՍՏՈՒՐԻՑԱ (Kusturica) Էմիր (ծ. 1954), սերբ կինոռեժ.: 1990-ական թթ–ի համաշխ. կինոյի առաջատարներից: Նկարահանել է «Հիշո՞ւմ ես Դոլլի Բելին» (1981), «Հայրիկը գործուղման մեջ է» (1985), «Գնչուների ժամանակը» (1988), «Արիզոնյան երազանք» (1992), «Ընդհատակ» («Underground», 1995), «Մև կատու, սպիտակ կատու» (1998), «Պատգամ» (2007) ևն: Այցելել է Հայաստան, 2010-ին և 2015-ին հանդես եկել համերգով՝ իր հիմնադրած «The No Smoking Orchestra» ֆոլկ-ռոք խմբի հետ:

«Ոսկե արմավենու ճյուղ» (1985, 1995, Կաննն), «Լյումիեր» (1995, Ֆրանսիա), «Սեզար» (2005, Ֆրանսիա) մրց-ներ, «Պատվո լեգեոն» շքանշան (2011, Ֆրանսիա) ևն:

ԿՈՒՎԵԶ (ֆրանս.՝ couveuse – թխսկան), թթվածնամատակարարման և օպտիմալ ջերմաստիճանի պահպանման ինքնաշխատ հարմարանք, որտեղ տեղավորում են վաղածին կամ հիվանդ նորածնին:


ԿՈՒՏԱԽՈՎ Պավել Ստեպանովիչ (1914–1984), ԽՍՀՄ ավիացիայի գլխ. մարշալ (1972): ԽՄ հերոս (1943, 1984): ՀՄՊ-ի ժամանակ եղել է կործանիչ ավիագնդի հրամ., կատարել է 367 մարտ. թռիչքներ, վարել 79 օդ. մարտ, անձամբ կործանել է 14, խմբով՝ 28 ինքնաթիռ: 1967-ից՝ ՌՕՈՒ գլխ. հրամ-ի տեղակալ, 1969-ից՝ գլխ.

հրամ., ԽՍՀՄ պաշտպ–յան նախարարի տեղակալ: Լենինյան մրց. (1983):

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՋՐՆԱՄԹԵՐՔ, *կումուլյատիվ զինամթերք*, կուտակային գործողության լիցքով (*Կուտակային էֆեկտ*) հրետան. արկեր, ականներ, նռնակներ, ավիացիոն ռումբեր, հրթիռների մարտ. մասեր, ճարտարագիտ. զինամթերք: Օգտագործվում է հիմնականում զրահապատ թիրախներ ոչնչացնելու համար:

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԷՖԵԿՏ, պայթյունի ալիքի կենտրոնացումը (կուտակումը) մի ուղղությամբ: Իրականացվում է *կուտակային լիցքով*:

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԼԻՑՔ, կոնաձև, գնդաձև փոսիկով պայթուցիկ նյութերի լիցք, որի գործողությունը հիմնված է *կուտակային էֆեկտի* վրա: Օգտագործվում է պարկուճ–ճայթիչներում, կուտակ. զինամթերքում, նաև բացահանքերում՝ հանքաբեկորների երկրորդ. ջարդման, մետաղների կտրման նպ համար:



Կուտակային լիցքի կառուցվածքն ու պայթյունի փուլերը. *1. լիցք, 2. ճայթիչ, 3. կուտակային փորվածք, 4. ծակվող արգելք, 5. ճայթյունի ալիքի ճակատ, 6. ճայթյունի արգասիքներ, 7. կուտակային շիթի առաջացման սկիզբը, 8. շիթը ծակում է արգելքը, 9. շիթն անջատվել և ծակել է արգելքը*

ԿՈՒՏԱԿԱՆԻ ՔՐՈՄԻՏԻ ՀԱՆՔԱՎԱՅՐ, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Կուտական գ–ից 3 *կմ* հս–արմ.՝ Սևանի լ–շղթայի հվ–արմ. լանջին: Հայտնաբերվել է 1935–ին, հետախուզվել 1945–ին և 1952–ին: Բաղկացած է լայնակի ուղղությամբ տարածվող 15 ոսպնյականաձև (երկ.՝ 4–25 *մ*, հաստ.՝ 0,2–1 *մ*) և 3 բնաձև (լայնակի կտրվածքը՝ մոտ 2 *մ*^{2}) հանքամարմիններից: Հանքանյութը հոծ է (43 % Cr_2O_3), հազվադեպ՝ ցանցավոր:

ԿՈՒՏԱԿԻՉ, Էներգիայի կուտակման սարք՝ այդ էներգիան հետագայում օգտագործելու նպատակով (ինքնավար էլ. սնուցում, գազի և հեղուկի ճնշման հավասարեցում ևն): Կախված կուտակված էներգիայի տեսակից՝ տարբերում են էլ., հիդրավլիկ, ջերմ. և իներցիոն Կ–ներ:

ԿՈՒՏԱԿՉԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑ, միատեսակ *կուտակիչների* խումբ, որոնք իրար միացված են էլեկտրականապես և կառուցվածքով՝ հոսանքի և լարման անհրաժեշտ արժեքներ ստանալու նպատակով:

ԿՈՒՏԱՅՍՈՎ, Ալեքսանդր Իվանովիչ (1784–1812), ռուս. բարոն (1799), կոմս (1799), գեն–մայոր (1806): Հրետանու հրամ. Բորոդինոյի ճակատամարտում (1812): Զոհվել է մարտում:

ԿՈՒՏԱՅՍՈՎ, Պավել Իպոլիտովիչ (1837/38–1911), ռուս. ռազմ. և պետ. գործիչ, հետևազորի գեն. (1900), կոմս: Ղեկավարել է Ռուս. կայսրության հվ–արլ. նահանգներում հրեական ջարդերի պատճառների հետաքննության հանձնաժողովը (1881):

ԿՈՒՏԱՐ (Coutard) Ռաուլ (1924–2016), ֆրանսիացի կինոօպերատոր: 1957–ից նկարահանել է հիմնականում Ժ. Լ. *Գոդարի* ֆիլմերը («Վերջին շնչում», «Փոքրիկ զինվորը», «Խենթ Պիեռոն», «Անունը՝ Կարմեն», «Կինը մնում է կին», «Վայրի անմեղություն» ևն): Նպաստել է նաև, այսպես կոչված, ռեպորտաժ. ոճի ստեղծմանը 1960–ական թթ–ի ֆրանս. կինոյում: Աշխատել է նաև Ֆ. Տրյուֆֆոյի, Ժ. Դեմիի, Կոստա–Գավրասի հետ:

ԿՈՒՏԱՆԵՒՅ Օլեգ Եմելյանովիչ (1937–2008), ռուս իրավաբան: ՌԴԱ ակադ. (2003), հաս. գիտ. բաժանմունքի ակադ. քարտուղար (2008): ՌԴ գիտ. վաստ. գործիչ (1993), 1987–2008–ին՝ Մոսկվայի իրավագիտության պետ. համալսարանի ռեկտոր: 1993–ին մասնակցել է ՌԴ Սահմանադրության նախագծի մշակմանը:

ԿՈՒՏԷ, XIV դ–ի Ոսկե Հորդայի բանաստեղծ: Հեղինակ է «Խոսրով և Շիրին» (1342) պոեմի, որը Նիզամու համանուն պոեմի փոխադրությունն է:

ԿՈՒՏԵՊՈՎ Ալեքսանդր Պավլովիչ (1882–1930), ռուս զորահրամ., Սպիտակ շարժման ռազմ. ղեկ–ներից, գնդ. (1916): Ռուս–ճապոն. պատերազմի (1904–05) և ԱՀՊ–ի մասնակից: Քաղաքաց. պատերազմում (1917–22) առաջիններից է անդամակցել Կամավոր. բանակին: Կամավորների՝ Նովոռոսիյսկի գրավումից հետո Կ. դարձել է սևծով. ռազմ. նահանգապետ, գեն–մայոր (1918), 1919–ի հունվ–ից՝ Հվ. Ռուսաստանի ԶՈՒ Կովկաս. կամավոր. բանակի 1–ին բանակ. կորպուսի հրամ., գեն–լեյտ. (1919): 1920–ի հունվ–ից՝ կամավոր. կորպուսի ջոկատի, մարտից՝ գեն–լեյտ. Պ. Ն. Վրանգելի գլխավորած ռուս. բանակի 1–ին բանակ. կորպուսի հրամ., հետևազորի գեն. (1920): Կ–ին 1930–ին Փարիզում ձերբակալել են խորհրդ. հետախուզության գործակալները, Նովոռոսիյսկ տեղափոխման ճանապարհին նավում մահացել է:

ԿՈՒՏԵՊՈՎ Ալեքսեյ Միտրոֆանովիչ (1929–2004), ռուս քիմիկոս: ՌԴԱ ակադ. (1992, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1987–ից): Աշխ–ները վերաբերում են հիդրոմեխ., ջերմա– և զանգվածափոխանակության շարժընթացների տեսությանը, դրանց կառավարման ֆիզքիմ. սկզբունքներին՝ ֆազ. փոխարկումների առկայության դեպքում:

ԿՈՒՏԵՎ Ֆիլիպ (1803–1982), բուլղար կոմպոզիտոր: ԲԺՀ սոց. աշխ. հերոս (1969): Հիմնադրել (1951, Սոֆիա) և ղեկավարել է ժող. երգի ու պարի անսամբլ: Հեղինակ է «Բուլղարական ռապսոդիա»–ի (1937), «Հերման» սիմֆ. պոեմի (1940), խմբերգերի, ռոմանսների ևն:

ԿՈՒՏՋԵԵ (Coetzee) Ջոն Մաքսվել (ծ. 1940), հվ–աֆրիկացի գրող: 2002–ից՝ Ավստրալիայում: Հեղինակ է փիլ. տարրերով զուգորդված «Բարբարոսներին սպասելիս» (1980), «Միխայել Կ–ի կյանքը և ժամանակը» (1983), «Պարոն Ֆոն» (1986), «Աշունը Պետերբուրգում» (1994), «Էլիզաբեթ Կոստելլո» (2003) և այլ վեպերի:

Նոբելյան մրց. (2003):

ԿՈՒՏԻԿՈՒԼԱ (լատ.՝ cuticula – նրբամաշկ), 1. **կենդանիների**, պինդ գոյացություն էպիթել. հյուսվածքի բջիջների մակերևույթին, ծածկում է ներքին օրգանները: 2. **Բույսերի**, բարակ թաղանթ, որը ծածկում է տերևների ու ցողունների *էպիդերմիսը*: Կատարում է պաշտպ. և հենարանային ֆունկցիաներ:

ԿՈՒՏԻՆԱ, (այժմ՝ ք. Քյոթահիա՝ Թուրքիայում, Քյոթահիա իլի վարչ. կենտրոնը, բն.՝ 107,0 հզ., 2004), բնակչության մի հատվածը XIV դ–ում Անիից գաղթած հայերն էին: Հայտնի էր գեղ. խեցեղենի արտադրյամբ: Արժեքավոր են անոթների վրա հանդիպող հայ. մակագրությունները, որոնք ունեն կրոն. բովանդակություն ու հաճախ հիշատակում են նկարիչների՝ Թոքատցի Հովհաննեսի, Միքայելի, Թորոսի, Այվազի և ուր. անուններ: Կ–ում է ծնվել *Կոմիտասը*, գործել է *Կուտինայի գրչության կենտրոնը*:

ԿՈՒՏԻՆԱՅԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, մշակույթի կենտրոն *Կուտինայում*: Հնագույն ձեռագիրը 1486–ին Աստվածատուր Կաֆայեցու ընդօրինակած Գանձարանն է (Երուսաղեմի մտնդ.): Կ. գ. կ–ի ձեռագրերը նկարագրված են Բաբկեն *Կյուլևերյանի* կազմած ցուցակում. մեծ մասը պահվել է Անկարայի Կարմիր վանքում, որոնց ճակատագիրն անհայտ է: XVI դ–ից մեզ է հասել 5 ձեռագիր, XVII–XVIII դդ–ից՝ Մաշտոցներ, Սաղմոսներ, Շարակնոցներ, կրոն. այլ ժող–ներ, նաև «Պատմութիւն Կուտինա քաղաքի» երկը: Կ. գ. կ–ում ընդօրինակված 6 ձեռագիր Մտնդ–ում է:

ԿՈՒՏՅՈՒՐ (Couture) Տոմա (1815–1879), ֆրանսիացի գեղանկարիչ: Սալոն. արվ–ի ներկայացուցիչ («Անկման շրջանի հռոմեացիները», 1847): Հեղինակ է մոնումենտալ որմնանկարների, դիմանկարների (Ա. Բրյոյ, 1850): Աշակերտներից են Է. Մանեն, Պ. Պյուվի դը Շավանը:

ԿՈՒՏՈՅԱՆՑ Յուրի Արտյոմի (ծ. 1946), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1988), պրոֆ. (1989), Ֆրանսիայի Էր Մանի Մեյն համալսարանի պրոֆ. (1991): Աշակել է պատահարների գնահատման ասիմպտոտիկ տեսություն, ստացել պատահական շարժընթացների բնութագրիչներ, ասիմպտոտիկ լավարկային հարաչափ. և ոչ հարաչափ. գնահատականներ:

ԿՈՒՏՈՆ (Couthon) Ժորժ Օգյուստ (1755–1794), յակոբինների առաջնորդներից Ֆրանս. հեղ–յան (XVIII դ.) ժամանակ: Մասնակցել է Լիոնի խռովության ճնշմանը (1793): Սահապատժի է ենթարկվել Մ. *Ռոբեսպիերի* հետ:

ԿՈՒՏՈՐԱՆԵՐ, *ջրասրընչակներ*, սրընչակների ընտանիքի կաթնասունների ցեղ: Մարմնի երկ.՝ 7–10, պոչինը՝ 4,5–7,5 *սմ*: Հայտնի է 2–3 տեսակ: Ապրում են գետերի, լճերի և ջրամբարների ափերին: Կերը հայթայթում են ջրում: Լավ լողում են և սուզվում: ՀՀ–ում հանդիպում է Շելկովնիկովի կուտորան: Օգտակար են. ոչնչացնում են վնասատու միջատներին:

ԿՈՒՏՈՒՋ, ալ–Մալիք ալ–Մուզաֆար Սայֆ ադ Դին Կուտուզ (ծ. թ. անհտ–1260), Եգիպտոսի մամլուք սուլթան՝ 1259–ից, 1253–ից՝ փոխսուլթան: 1260–ին Պաղեստինում դաշինք է կնքել խաչակիրների ու իր ախոյան *Բեյբարսի* հետ, Այն Ջալուտի ճակատամարտում պարտության է մատնել մոնղ. բանակին: Վերադարձել է Եգիպտոս, որտեղ նրան սպանել է Բեյբարսը:

ԿՈՒՏՈՒԶՈՎ, Միխայիլ Իլլարիոնովիչ (1745–1813), ռուս. զորավար, գեն–ֆլդմ. (1812), Սմոլենսկի պայծառափայլ իշխան (1812): Մասնակցել է XVIII դ–ի ռուս–թուրք. պատերազմներին: 1805–ի ռուս–ավստրո–ֆրանս. պատերազմում՝ ռուս. զորքերի հրամ.: 1806–12–ի ռուս–թուրք. պատերազմում նշանակվել է (1811) Մոլդ. բանակի գլխ. հրամ.: 1811–ին հաղթանակ է տարել Ռուչչուկի և Սլոբոձիայի մոտ, 1812–ին կնքել Բուխարեստի հաշտության պայմա-

նագիրը: 1812-ի Հայրեն. պատերազմում (օգոստ. 8-ին) նշանակվել է ռուս. բանակի գլխ. հրամ.: Կ-ի բանակը ջախջախել է Նապոլեոնի զորքերին: 1813-ին ռուս. բանակը Կ-ի հրամանատարությամբ հատել է սահմանն ու մտել Արմ. Եվրոպայի տարածք:

ԿՈՒՏՈՒԶՈՎ, Նիկոլայ Վասիլևիչ (1926–2011), ռուս խմբավար: ԽՍՀՄ ժող. արտիստ (1986): 1950-ից՝ Կենտր. հեռուստատեսության և ռադիոյի ռուս. ժող. երգչախմբի խմբավար, 1954-ից՝ գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: Հեղինակ է խմբերգների, ռուս. ժող. երգերի մշակումների:

ԿՈՒՏՈՒՄ, **կասպիական ձուկ**, ծածանաձկների ընտանիքի կիսագաղթող ձուկ: Երկ.՝ մոտ 60 *սմ*, կ. զ.՝ մինչև 2 *կգ*: Ապրում է Կասպից ծովում: Արդյունագործ. արժեքավոր ձուկ է:

ԿՈՒՏՈՒՅ Ռուստեմ Ադել (1936–2010), թաթար ռուսագիր գրող: Հեղինակ է «Անձրև կգա» (1963), «Ձյունից կին կծեփեմ» (1966), «Հուլիսյան սնկերը» (1984), «Լույսը կաղամախու անտառում» (1988) քնար. և հոգեր. վիպակների, «Կանչ» (1975), «Արմատներ» (1982), «Քամու կիսադեմը» (2006) քնար. բանաստեղծությունների ժող-ների:

ԿՈՒՐ (վրաց.՝ Մթքվարի, ադրբ.՝ Քուռ), գետ Հայկ. լ-աշխարհում և Հվ. Կովկասում: Սկիզբ է առնում Հայկ. լ-աշխարհի Կարմիր փորակ լ-շղթայի հս-արլ. աղբյուրներից և ճահիճներից՝ 2025 *մ* բարձրից: Երկ.՝ 1364 *կմ*, ավազանը՝ 188 հզ. *կմ*^{2}: Միախառնվում է Արաքսին և թափվում Կասպից ծով՝ առաջացնելով դելտա (100 *կմ*^{2}): Նավարկելի է Եվլախ ք-ից մինչև գետաբերան (600 *կմ*): Կ-ի վրա կառուցված են Ձեմո-Ավճալյան Մինգեչաուրի (ջրամբարով) և այլ ջրէկներ: «Կ.» անվանումն (հայ-ի առանձին բարբառներում՝ «կուռ») ունի «ջրի ավազանի» նշանակություն:

ԿՈՒՐԱԿԻՆ Բորիս Իվանովիչ (1676–1727), ռուս իշխան, դիվանագետ: *Պետրոս I*-ի զինակիցը: Ազովյան արշավանքների և Հս. պատերազմի մասնակից: Պոլտավայի ճակատամարտում գլխավորել է Սեմյոնովյան գունդը: Դեսպան՝ Մեծ Բրիտանիայում, Հոլանդիայում, Հանովերում, Ֆրանսիայում: Ռուսաստանի անունից ստորագրել է մի քանի պայմանագիր: Հեղինակ է «Պատմություն Պետրոս Մեծի և նրա մերձավորների մասին» գրքի, նաև ճամփորդ. նոթերի ևն:

ԿՈՒՐԱԿԻՆ Ֆեոդոր Ֆեոդորովիչ (ծ. թ. անհտ–1684), ռուս իշխան, պետ. գործիչ, բոյար (1660): Հետևան Ի. Ե. Վիգովսկու ապստամբության ճնշման (1658–59-ին) ժամանակ և Տուլայում (1661–62-ին)՝ գնդի վոյեվոդա, 1661–63-ին՝ բոյար. հանձնաժողովի անդամ. կառավարել է Մոսկվան՝ ցարի բացակայության [այդ թվում՝ 1662-ի Պղնձի (պղնձադրամի) խռովության] ժամանակ, Վլադիմիրի դատ. գերատեսչության պետ (1662–63, 1666), Սմոլենսկի վոյեվոդա (1663–65), 1667-ից՝ արքայազն Ֆեոդոր Ալեքսեևիչի դաստիարակը:

ԿՈՒՐԱՄԱԿՆԵՐ (Spalacidae), կրծողների կարգի կաթնասունների ընտանիք: Մարմնի երկ.՝ 5–25 *սմ*, պոչը՝ կարճ: Արտաքին ականջ չունեն, աչքերը հետաճած են (այստեղից՝ անվանումը): Ընդգրկում է 2 ցեղի 8 տեսակ: ՀՀ-ում հանդիպում է փոքր Կ-ի Nannospalax ցեղի 1 տեսակ՝ *Ներքինգի կուրամուկը*:

ԿՈՒՐԱՄԱԿՆԻԿՆԵՐ (Ellobius), համստերանմանների ընտանիքի դաշտամկների ենթաընտանիքի կրծող կաթնասուն կենդանիների ցեղ: Հարմարված են ստորգետնյա կյանքին: ՀՀ-ում հանդիպում է 1 տեսակ՝ անդրկովկաս. Կ.: Մարմինը գլանաձև է, աչքերը մանր են՝ մշակով ծածկված (այստեղից՝ անվանումը): Մնվում են բույսերի արմատներով, ընդերացողուններով, սոխուկներով ևն:

ԿՈՒՐԱՆՏ (Courant) Ռիխարդ (1888–1972), գերմանացի մաթեմատիկոս: ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1966): 1934-ից՝ ԱՄՆ-ում: 1946-ին Նյու Յորքի համալսարանին կից ստեղծել է մաթ-ի և մեխանիկայի ինստ.: Աշխ-ները վերաբերում են համաձև (կոնֆորմ) արտապատկերումներին, մաթ. ֆիզիկային, դիֆերենցիալ հավասարումներին:

ԿՈՒՐԱՆՏՆԵՐ, երաժշտ. մեխանիզմով աշտարակների կամ սենյակային խոշոր ժամացույցների անվանումը, որոնք արտաբերում են որոշակի մեղեդիական հաջորդականություն կամ կատարում փոքրիկ երաժշտ. պիեսներ: Հայտնի են Կրեմլի Կ.:

ԿՈՒՐԱՍԻԿԻ, ք-նվինգստ Ճապոնիայի Հոնսյու կղզում: Բն.՝ 178,5 հզ. (2014):

ԿՈՒՐԱՏՈՎ, Իվան Ալեքսեևիչ (1839–1875), կոմի բանաստեղծ-դեմոկրատ, լուսավորիչ: Կոմի գրկ-յան հիմնադիրը: Հեղինակ է «Սամսոն» (1865), «Իմ մուսան» (1866–67) և այլ բանաստեղծությունների, «Կույրի գրառումները» (1875) պոեմի:

ԿՈՒՐ-ԱՐԱՔՍՅԱՆ ԴԱՇՏԱՎԱՅՐ, Արլ. Այսրկովկասում՝ Կուր և Արաքս գետերի ստորին հոսանքներում՝ Մեծ Կովկասի և Փոքր Կովկասի միջև, Ադրբեջանում: Երկ.՝ 250 *կմ*, լայն.՝ 150 *կմ*: Բարձր.՝ մինչև 200 *մ*, միջին և արլ մասերում՝ օվկ-ի մակարդակից ցածր: Զարգացած երկրագործ. շրջան է: Կ-Ա. դ-ի հետ է կապված *Կուր-Արաքսյան մշակույթը*:

ԿՈՒՐ-ԱՐԱՔՍՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ, Հայկ. լ-աշխարհում և հարևան երկրամասերում մ. թ. ա. III հզ-ամյակում տարածված հնագիտ. մշակույթի պայման. անվանումը: Հայտնի է նաև «կարմրասև կոկված խեցեղենի» մշակույթ անվամբ: 1-ին նմուշները հայտնաբերվել են 1869-ին՝ Փիփ գ-ում (ներկայի Ադրբեջանի Դաշքեսանի շրջան), և ՀՀ Արմավիրում՝ 1879-ին: Մշակույթն առաջինը բնութագրել է հնէաբան Բ. Ա. *Կուֆտինը*: Հետազոտված կարևորագույն հուշարձաններն են՝ ՀՀ-ում՝ Մոխրաբլուր, Ջրահովիտ, Շենգավիթ, Հառիճ, Արմ. Հայաստանում՝ Կարագ, Փուլուր, Քորուչութեփե, Ջյուլթափա I (Նախիջևանի մոտ) ևն: Կ-Ա. մ-ի ազդեցության ոլորտները նկատելի են Հս. Կովկասում, Սիրիայում և Պաղեստինում: Զարգացման հիմն. կենտրոնները եղել են Արաքս գետին հարող երկրամասերը (հատկապես Արարատյան դաշտը): Կ-Ա. մ-ին բնորոշ են փայլեցված սև մակերևույթով, վարդագույն, դարչնագույն կամ գորշ աստառով, գնդաձև կանթերով խեցեղենը և օջախի պայտաձև կավե հենակները: Մշակույթի տարածման շրջանում ձևավորվել են քաղաք. մշակույթի տարրեր: Մ. թ. ա. մոտ 2100–1900-ին Կ-Ա. մ-ին փոխարինել է միջին բրոնզիդար. մշակույթը:

ԿՈՒՐԱՆԲԵ, ուժեղ թույն. ստացվում է փսխընկուզենու և լոգանազգիների ընտանիքի այլ բույսերի կեղևի լուծամզուքի խտացմամբ: Պարունակում է *կուրարինին*: Արյան մեջ թափանցելիս ունենում է նյարդալուծանք. ազդեցություն: Հվ. Ամերիկայի բնիկներն օգտագործել են նետերը թունավորելու համար: Կ-ի կամ սինթետիկ փոխարինող (կուրարենմաններ) միջոցների՝ բուժիչ կամ հետազոտ. նպատակներով կիրառումը կոչվում է կուրարեացում:

ԿՈՒՐԱՐԵՆՄԱՆ ԴԵՂԱՆՅՈՒԹԵՐ, ծայրամաս. ազդեցության միոռելաքսանտներ. դեղանյութեր, որոնք խանգարում են նյարդամկան. սինապսներում ազդակների հաղորդմանը և դրա հետ կապված առաջացնում միջաձիգ-զոլավոր մկանների թուլացում: Օգտագործում են հիմնականում վիրահատությունների ժամանակ:

ԿՈՒՐԱՐԻՆՆԵՐ, ալկալոիդներ, որոնք պարունակվում են հարավամերիկ. մի շարք բույսերում. մտնում են ***կուրարե*** թույնի բաղադրության մեջ:

ԿՈՒՐԲԱՆ-ԲԱՅՐԱՄ (թուրք.), **իդ ալ-ադհա** (արաբ.), զոհաբերության տոն, որն ազդարարում է ***հաջի*** ավարտը Մեքքայում: Մահմեդականության 2 գլխ. (ուրազբայրամի հետ) տոներից է, որն սկսվում է զու լը հիջա ամսի 10-ին և տևում 3–4 օր:

ԿՈՒՐԲԱՆՆԵԳԵՎՈՎ, Քերիմ (1929–1988), թուրքմեն գրող: Թուրքմենստանի ժող. գրող (1967): Հեղինակ է «Մրցություն» (1972), «Կյանք» (1975), «Երկիր» (1978), «Ճամփակեսին» (1979) բանաստեղծությունների ժող-ների, նաև պոեմների, թարգմ-յունների: Կ-ի մի շարք բանաստեղծություններ դարձել են ժող. երգեր:

Համառուս. Ն. Ս. Լեսկովի (2012) անվ. գր. մրց.:

ԿՈՒՐԲԱՆՈՎ, Սուհրոբ Ուսմանովիչ (1946–2016), տաջիկ գեղանկարիչ: Տաջ. ԽՍՀ (1986), ԽՍՀՄ (1990) ժող. նկարիչ: 1982–2012-ին՝ Տաջիկստանի նկարիչների միության վարչության քարտուղար: Հեղինակ է գծերի և գույնի մշակված հստակ ռիթմով մոնումենտալ կոմպոզիցիաների (եռապատկեր՝ «Մտածում եմ, ուրեմն կամ», 1985): Տաջիկստանի Պետ. մրց. (1990, 1996, 2010):

ԿՈՒՐԲԱՆՄԱՀԱՏՈՎ, Կուրբանդուրդի (1919–1992), թուրքմեն գրող: Թուրքմենստանի ժող. գրող (1990): Հեղինակ է ժամանակակից կյանքը պատկերող «Սիրտը քար չէ» (1958), «Քառասուն դրամ» (1961), «Հարազատ մարդ» (1965) վիպակների և պատմվածքների ժող-ների, թուրքմ. առլի մասին «Թոյլի Մերգեն» (1970) վեպի, բանաստեղծությունների, նաև պոեմների, պիեսների, կինոսցենարների:

ԿՈՒՐԲԱՄ Լես (Ալեքսանդր Ստեպանովիչ, 1887–1937), ուկրաինացի ռեժ., դերասան, մանկավարժ: Ուկր. ԽՍՀ ժող. արտիստ (1925): Ուկր. թատրոնի բարեփոխիչներից: Կազմակերպել և ղեկավարել է «Երիտասարդ թատրոն» (1917), «Բերեզիլ» (1922, այժմ՝ Տ. Շևչենկոյի անվ. ուկր. թատրոն, Խարկով) թատերախմբերը: Բեմադրել է «Հայդամակներ» (1920, ըստ Տ. Գ. Շևչենկոյի), Մ. Գ. Կուլիշի «Ժողովրդական Մալախին» (1928), «Մինա Մազայլո» (1929), «Մակլենա Գրասա» (1933) և այլ գործեր: Անհիմն ձերբակալվել է, գնդակահարվել:

ԿՈՒՐԲԱՏՈՎ, Լեոն Նիկոլաևիչ (1913–2004), ռուս. ֆիզիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1972): Ղեկավարել է մի շարք լուսաէլ. սարքերի և կիսահաղորդչ. լազերների մշակման աշխ-ները: ԽՍՀՄ Պետ. մրց. (1970, 1985):

ԿՈՒՐԲԵ (Courbet) Գյուստավ (1819–1877), ֆրանսիացի գեղանկարիչ: 1871-ի Փարիզի կոմունայի մասնակից: Ձգտել է բացահայտել առօրյա կյանքի գեղ.

կարևորությունը («Թաղում Օռնանում», 1849–50, ևն): Կ–ի գործերին բնորոշ են մոնումենտալ ձևերի ստատիկությունը, գույների տոնային հագեցվածությունը («Արվեստանոց», 1855, ևն), բնանկարներին («Տնակները լեռներում», մոտ 1874, ևն) և նատյուրմորտներին («Միգեր», 1871, ևն)՝ առարկայական հստակությունն ու դիտողականությունը:

ԿՈՒՐԲԵՏ Վլադիմիր Կոզմովիչ (ծ. 1930), մոլդավ բալետմայստեր: Մոլդ. ԽՍՀ (1967), ԽՍՀՄ (1981) ժող. արտիստ: 1958–ից՝ «Ժոկ» անսամբլի գեղ. ղեկ. և գլխ. բալետմայստեր: ԽՍՀՄ Պետ. (1972), Մոլդովայի Ազգ. (2012) մրց–ներ:

ԿՈՒՐԲՍԿԻ Անդրեյ Միխայլովիչ (1528–1583), ռուս իշխան, պետ. և ռազմ. գործիչ, գրող, թարգմանիչ, բոյար (1556): Վախենալով «հանիրավի» շնորհազրկվել Իվան IV–ից՝ փախել է Լիտվայի մեծ իշխանություն (1564): Մասնակցել է Ռուսաստանի դեմ պատերազմին: Հեղինակ է «Պատմություն Մոսկվայի մեծ իշխանի մասին» (1573–ի և 1583–ի միջև) պամֆլետի և այլ երկերի:

ԿՈՒՐԳԱՆ, ք. (1782–ից) ՌԴ–ում՝ Տոբոլ գետի ափին, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Երկթղ. հանգույց է: Բն.՝ 326,4 հզ. (2015):

ԿՈՒՐԳԱՆԻ ՄԱՐԶ, վտմ ՌԴ–ում՝ Արևմտասիբիր. հարթավայրում: Ներառված է Ուրալի դաշն. օկրուգի կազմում: Տարածքը՝ 71,5 հզ. *կմ*², բն.՝ 870 հզ. (2015): Վարչ. կենտրոնը՝ ***Կուրգան***:

ԿՈՒՐԳԱՆՈՎ Նիկոլայ Գավրիլովիչ (1725–1796), ռուս լուսավորիչ, մանկավարժ, հրտ.: Հեղինակ է «Ռուսերենի համապարփակ քերականություն...» (1769, 2–րդ հրտ–ը՝ «Ինքնուսույց ժողովածու» վերնագրով) հանրամատչելի հանրագիտարանի:

ԿՈՒՐԳԱՆ–ՏՅՈՒԲԵ, ք. Տաջիկստանի հվ–արմ–ում, Խատլոնի մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 102 հզ. (2014):

ԿՈՒՐԴԻՄՈՎ Արչիլ Գրիգորի (1903–1988), վրացի ճարտ.: ԽՍՀՄ ժող. ճարտ. (1970): ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի թղթ. անդամ (1979): Նրա նախագծով կառուցված «Դինամո» մարզադաշտը Թբիլիսիում (1933–37) աչքի է ընկնում վրաց. ազգ. զարդապատկերներով: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941):

ԿՈՒՐԴԻՅԱՆ Կարեն Գրիգորի (ծ. 1938), հնչյունային օպերատոր: 1963–ից՝ Հայֆիլմի հնչյուն. օպերատոր («Անլռելի գույներ», 1973, «Բոլորակ», 1990, երկուսն էլ՝ վավերագր., «Մենք ենք, մեր սարերը», 1969, «Նահապետ», 1978, երկուսն էլ՝ գեղ., «Պինգ–պոնգ», «Քամի», երկուսն էլ՝ 1981, մուլտֆիլմեր, ևն):

ԿՈՒՐԴՅՈՒՄՈՎ Գեորգի Վյաչեսլավովիչ (1902–1996), ռուս. ֆիզիկոս: Ուկր. ԽՍՀ ԳԱ (1939) և ՌԴԱ (1953) ակադ.: Սոց. աշխ. հերոս (1969): Աշխ–ները վերաբերում են ֆիզ. մետաղագիտ–յանը, պլաստիկ ձևախախտման ֆիզիկային, մետաղների ամրացմանն ու թուլացմանը, լեգիրացմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949):

ԿՈՒՐԵ, ք. Ճապոնիայում՝ Հիրոսիմա պրեֆեկտուրայում: Բն.՝ 230 հզ. (2014): Հայտնի է որպես նավաշինության կենտրոն և Ճապոնիայի ՌԾՈՒՖ հենակետ:

ԿՈՒՐԵՆՅՈՎ Վիկտոր Գրիգորևիչ (ծ. 1941), ռուս մարզիկ (ծանրամարտ): ԽՍՀՄ ս. վ. վ. (1966): Օլիմպ. (1968), աշխարհի (1965–70, ռեկորդակիր՝ 1964–73), ԽՍՀՄ (1964–70, 1972, 1974) չեմպիոն:

ԿՈՒՐԺԱՆՍԿԻ Ալեքսանդր Բորիսովիչ (ծ. 1939), ռուս. մաթեմատիկոս: ՌԴԱ ակադ. (1990): Աշխ–ները վերաբերում են կառավարման շարժ.ընթացների մաթ. տեսությանը: Լենինյան մրց. (1976):

ԿՈՒՐԻ ԲԵԼԼՈՒ (Barbus lacerta cyri), *ծածանաձկների* ընտանիքի տեսակ: ՀՀ–ում ամենատարածված ձկներից է: Հանդիպում է գրեթե բոլոր գետերում, խոշոր ջրամբարներում (բացառությամբ Սևանա լճի և նրա մեջ թափվող գետերի): Մարմինը գլանաձև է, երկ.՝ 14–15 (երբեմն՝ մինչև 25) *սմ*, կ. զ.՝ 250 *գ* և ավելի: Վարում է մերձհատակային կենսաձև: Կենդանակեր է: Չկնորսության ձուկ է:

ԿՈՒՐԻ ԵՆԹԱԲԵՐԱՆ (Chondrostome oxyrhynchum cyri), ***ծածանաձկների*** ընտանիքի ձուկ: ՀՀ–ում հանդիպում է Արաքս, Ախուրյան, Մեծամոր, Հրազդան, Արփա, Որոտան, Քասաղ, Մարմարիկ գետերում, Արփի լճում, Ախուրյանի ջրամբարում: Երկ.՝ 14–16 (երբեմն՝ մինչև 20) *սմ*: Ապրում է վտառներով, սնվում բուս. կերով, մանրաձկները՝ փոքր անողնաշարներով:

ԿՈՒՐԻ ԼԵՐԿԱՁՈՒԿ (Barbatula brandi), բալիտորաձկների ընտանիքի ձուկ: ՀՀ–ում հանդիպում է Ձորագետ և Դերեդ, նաև Կուրի ավազանի մյուս գետերում (Տավուշ, Աղստև, Փամբակ): Երկ.՝ 4–6 (երբեմն՝ մինչև 8) *սմ*: Կենդանակեր է, սնվում է բենթոսի մանր անողնաշարներով նև:

ԿՈՒՐԻ ԿՈՂԱԿ [Capoeta (varicorhinus) capoeta] , ***ծածանաձկների*** ընտանիքի ձուկ: ՀՀ–ում հանդիպում է (սակավաթիվ խմբերով) Արաքս, Ախուրյան, Արփա, Դերեդ, Որոտան, Մեծամոր և այլ գետերում: Համեմատաբար խոշոր ձուկ է: Երկ.՝ 40–50 (երբեմն՝ մինչև 75) *սմ*, կ. զ.՝ 5 *կգ*–ից ավելի: Վարում է մերձհատակ. կենսաձև, սնվում է ստորակարգ ջրիմուռներով, մանրաձկները՝ պլանկտոնով: Պահպանության կարիք ունի:

ԿՈՒՐԻ ՍՊԻՏԱԿԱՁՈՒԿ (Aburnus filipp), ***ծածանաձկների*** ընտանիքի ձուկ: ՀՀ–ում հանդիպում է Արաքս, Մեծամոր, Հրազդան, Արփա, Ախուրյան, Քասաղ, Եղեգիս, Որոտան գետերում և նրանց ջրերով սնվող արհեստ. լճակներում ու ջրանցքներում, ավելի հաճախ՝ արագահոս տեղամասերում: Երկ.՝ 7–8 (երբեմն՝ մինչև 15) *սմ*, կ. զ.՝ մինչև 40 *գ* և ավելի: Ապրում է վտառներով: Կենդանակեր է:

ԿՈՒՐԻԱ (Curia), 1. Հին Հռոմում պատրիկյան տոհմերի միավորում՝ կուրիոնի գլխավորությամբ: Կազմված էր 10 տոհմից: 10 Կ. կազմում էր վարչատարածք. 1 միավոր՝ տրիբուս: 2. Միջնադար. Արմ. Եվրոպայում՝ սենիորի խորհրդակցությունը վասալների հետ, թագավոր. Կ.՝ թագավորի ժողովները խոշոր ավատատերերի հետ: 3. Հռոմի պապին ենթակա հիմնարկների ամբողջությունը, որոնցով իրականացվում է եկեղեցու կառավարումը (պապական Կ.): 4. Բուրժուական երկրներում ընտրողների հատուկ դասակարգումներ (ընտրական Կ.)՝ ունեցվածք., ազգ. և այլ հատկանիշներով:

ԿՈՒՐԻԼ–ԿԱՄՉԱՏԿԱՅԻ ՓՈՂԱՐԱԿ, Խաղաղ օվկ–ում, Կուրիլ. կղզիների արլ. խութերի լանջին և Կամչատկայի հվ. մասում: Երկ.՝ 2170 *կմ*, միջին լայն.՝ 59 *կմ*, խոր.՝ մոտ 9717 *մ*:

ԿՈՒՐԻԼՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ, կղզեխումբ Օխոտի ծովի և Խաղաղ օվկ–ի սահմանագծին՝ Հոկայդո կղզու և Կամչատկա թ–կղզու միջև: Երկ.՝ մոտ 1200 *մ*, ընդհ. տարածքը՝ 10,5 հզ. *կմ*²: Հվ–ով է անցնում Ճապոնիայի հետ ՌԴ պետ. սահմանը: Բաժանվում է Կուրիլ. Մեծ և Փոքր շղթաների: Ներառում է 56 կղզի: Կան մոտ 40 գործող հրաբուխներ, ջերմուկներ:

ԿՈՒՐԻԼՅԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ, **Օյասիս**, սառը հոսանքներ Խաղաղ օվկ–ում. շարժվում են հս–ից հվ՝ ***Կուրիլյան կղզիների*** արլ. ափերի և ***Հոկայդո կղզու*** երկ–յամբ: Հս. լայն–յան 40°–ում ***Կուրոսիո*** հոսանքի հետ հանդիպումով սկզբնավորում են ***Հյուսիս–խաղաղօվկիանոսային հոսանքը***:

ԿՈՒՐԻԼՈՎ Սեմյոն Նիկոլաևիչ (1935–1980), յուկագիր գրող: Հեղինակ է հիմնականում տունդրայի եղջերվաբույծների կենցաղի մասին բանահյուս. թեմաներով «Խանիդո և Խալերխա» (1969) և «Նոր մարդիկ» (1975) վեպերի, նաև պատմվածքների, հեքիաթների:

ԿՈՒՐԻԼՈՎԻՉ (Kuryłowicz) Եժի (1895–1978), լեհ լեզվաբան: Ժամանակակից կառուցվածք. լեզվաբ–յան հիմնադիրներից: Լեհաստանի ԳԱ ակադ. (1931–ից): Հեղինակ է հնդեվրոպ. լեզուների հնչյունաբանությանը և ձևաբանությանը վերաբերող աշխ–ների: Հետազոտել է բալթյան, սլավոն., աֆրո–ասիական և այլ լեզուներ:

Լ.Ժ.Հ Պետ. մրց. (1955, 1964):

ԿՈՒՐԻՅԱ–ՄՈՒՌԻՅԱ, 5 ժայռոտ կղզիներ Արաբ. թ–կղզու մոտ: Պատկանում է Եմենի Ժ.Դ.Հ–ին: Տարածքը՝ 76 *կմ*², բարձր.՝ 502 *մ*:

ԿՈՒՐԻՐՆՆՈՅ Իգոր Իգորևիչ (ծ. 1972), ռուս մարզիկ և մարզիչ (սամբո): ՌԴ ս. վ. վ. (1994), Ռուսաստանի վաստ. մարզիչ (2002): Աշխարհի չեմպիոն (1991, 1994, 2001)՝ սամբո, Եվրոպայի չեմպիոն (2002–04)՝ սումո մարզաձևերում:

ԿՈՒՐԻՏԻԲԱ (Curitiba), ք. Բրազիլիայի հվ–արլ–ում, Պարանա նահ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 2 մլն (2013, արվարձաններով՝ 3,57 մլն): Ունի միջազգ. օդանավակայան:

ԿՈՒՐԻՑԻՆ Իվան Վասիլևիչ, **Վոլկ** (ծ. թ. անհտ–1504), ռուս պետ. գործիչ և դիվանագետ, ատենադպիր (1492–ից ոչ ուշ): Ֆ. Վ. ***Կուրիցինի*** եղբայրը: Եղբոր հետ հավանաբար մասնակցել է 1497–ի Դատաստանագրքի կազմմանը: Ընդօրինակել և կազմել է եկեղեցաիրավաբ. բովանդակությամբ ժող–ներ (1480–ական թթ–ի վերջ–1490–ական թթ–ի սկիզբ): Մեղադրվել է հերետիկոսության մեջ, դատապարտվել մահապատժի (այրել են խարույկի վրա):

ԿՈՒՐԻՑԻՆ Ֆեոդոր Վասիլևիչ (ծ. թ. անհտ–1500), ռուս պետ. գործիչ և դիվանագետ, գրող: Մոսկվայի հերետիկոսների խմբակի ղեկ.: Ի. Վ. ***Կուրիցինի*** եղբայրը: Կարևոր դերակատարություն է ունեցել ռուս. պետականության քաղ. դոկտրինայի մշակման աշխ–ներում: Մասնակցել է 1497–ի Դատաստանագրքի, հավանաբար՝ նաև 1500–ի տարեգրքի կազմմանը: Հեղինակ է «Լատինկյան ուղերձներ» երկի: 1490–ին մեղադրվել է հերետիկոսության մեջ (1504–ի ժողովի որոշմամբ իր խմբի հետ մեղադրվել է գաղտնի հուդայականության մեջ):

ԿՈՒՐԾ, կաթնասունների կաթնային գեղձը: Տարբերում են բազմամաս Կ.՝ 4–8 մասերից կազմված (խոզերի և շների), 2 կեսերից (մաքիների, այծերի ևնի) կամ 2 զույգից՝ 1 ամբողջական Կ–ում միավորված (կովերի, ձիերի):

ԿՈՒՐԾ–Ք, իրանի առաջային (ողնաշարավոր կենդանիների մեծամասնության) և վերին (մարդու) բաժինը: Հողվածոտանիների Կ. գլխի և փորիկի միջև ընկած բաժինն է:

ԿՈՒՐԿՈՏԿԻՆ Սեմյոն Կոնստանտինովիչ (1917–1990), խորհրդ. զորահրամ.: ԽՍՀՄ մարշալ (1983): ԽՄ հերոս (1981): ՀՄՊ-ի ժամանակ եղել է տանկ. գնդի, բրիգադի հրամ-ի տեղակալ, տանկ. գումարտակի, բրիգադի հրամ.: 1966–68-ին՝ Գերմանիայում խորհրդ. զորքերի գլխ. հրամ-ի 1-ին տեղակալ, 1971–72-ին՝ գլխ. հրամ., 1968–71-ին՝ Անդրկովկաս. ՋՕ զորքերի հրամ., 1972–88-ին՝ պաշտպ-յան փոխնախարար, ԽՍՀՄ թիկունքի ՋՈւ պետ:

ԿՈՒՐԿՈՒՄԱՆԵՐ, հայազգի նշանավոր տոհմ Բյուզանդիայում: Առավել հայտնի են Հովհաննես Կուրկուաս I-ը (տոհմի հիմնադիր), Հովհաննես Կուրկուաս II-ը, Թեոփիլոս Կուրկուասը, Ռոմանոս Կուրկուասը և Հովհաննես Կուրկուաս III-ը:

ԿՈՒՐԿՈՒՄՔԱՆ, բակլազգիների (թիթեռնածաղկավորներ) ընտանիքի բազմամյա, հազվադեպ՝ միամյա խոտաբույսերի, կիսաթփերի, թփերի ցեղ: Հայտնի է 70 (150) տեսակ, ՀՀ-ում՝ 7՝ գրեթե բոլոր մարզերում: Որոշ տեսակներ գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

ԿՈՒՐԿՋԻՆՅԱՆ (Փոպոլճյան) Շուշանիկ Հարությունի (1876–1927), բանաստեղծուհի: Գործերը նվիրված են սոցիալ. անարդարության և բռնության դեմ պայքարին, սոց. հեղ-յանը («Ետ տար քո խաչը», «Բանվորները», «Հանգցրեք ջահերը»), կնոջ իրավունքների պաշտպ-յանը («Գեղջկուհու մորմոքը», «Արծվի սերը», «Որպես քնքուշ մայիսյան վարդ...» ևն): Հեղինակ է նաև «Արշալույսի դողանջներ» (1907) բանաստեղծությունների ժող-ի, պիեսների:

ԿՈՒՐՇԻ ՅԱՄԱՔԱԼԵՋՎԱԿ, ավազոտ թ-կղզի Բալթիկ ծովի հվ-արլ. ափին՝ Լիտվայում և ՌԴ Կալինինգրադի մարզում: Երկ.՝ 98 *կմ*, լայն.՝ 0,4–3,8 *կմ*: Գործում է նույնանուն ազգ. պարկ (ՌԴ), Ներենգա գետի վրա՝ ծով. թանգարան և աքվարիում (Լիտվա): Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ԿՈՒՐՊԱՏԿԻՆ Ալեքսեյ Նիկոլաևիչ (1848–1925), հետևազորի ռուս գեն. (1901): 1898–1904-ին՝ Ռուսաստանի ռազմ. նախարար: Ռուս-ճապոն. պատերազմում ղեկավարել է զորքերը Մանջուրիայում, պարտվել Լյաոյանի և Մուկդենի մոտ: ԱՀՊ-ի ժամանակ՝ Հս. ռազմաճակատի հրամ. (1916-ին): 1916–17-ին՝ Թուրքեստանի գեն-նահանգապետ, որի ղեկավարությամբ ճնշվել է Միջինասիական ապստամբությունը (1916): Հեղինակ է ռազմապատմ. և ռազմաուշարհագր. աշխ-ների:

ԿՈՒՐՈՍԱՎԱ Ակիրա (1910–1998), ճապոնացի կինոռեժ., սցենարիստ: Նկարահանել է «Ռաշոմոն» (1950), «Ապուշը» (1951, ըստ Ֆ. Դոստոևսկու), «Յոթ սամուրայներ» (1954), «Դերսու Ուզալա» (1975, Մոսֆիլմի հետ), «Ռազմիկի ստվերը» (1980), «Ռան» («Խռովություն», 1985), «Օգոստոսյան ռապսոդիա» (1991) և այլ ֆիլմեր: Կ-ի սցենարներով նկարահանվել են 20-ից ավելի ֆիլմեր, որոնց բնորոշ են մարդկային բնավորությունների վառ բացառիկությունը, սուր դրամատիկ բախումները:

ԿՈՒՐՈՍԻՈ, **ճապոնական հոսանք**, օվկիանոս. տաք հոսանք Խաղաղ օվկ-ի հսարմ-ում՝ Ճապոնիայի հվ. և արլ. ափերի մոտ: Առաջանում է Արևելաչին. ծովի հս. մասի և նրան հարող Խաղաղ օվկ-ի մակարդակների տարբերության հետևանքով: Հս. լայն-յան 40°-ում հանդիպում է սառը ***Կուրիլյան հոսանքին***, սկզբնավորում Հյուսիսխաղաղօվկիանոս. հոսանքը:

ԿՈՒՐՈՐՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ գիտահետազոտական, Երևանի, հիմնադրվել է 1930-ին (մինչև 1994-ը՝ տարբեր անվանումներով): Վերականգնող. բժշկության բազմապրոֆիլ գիտազորձն. և տարածք. ուս. կենտրոն է: Մշակում է կանխարգելիչ ու վերականգնող., բնական բուժ-առող.ջարար. միջոցներ, առող.ջար. և բուժիչ սննդի, համաչափ ֆիզ. ակտիվության, էկոանվտանգ վերականգնող. տեխնոլոգիաներ: 2010-ին ինստ-ը հրատարակել է «Ատլաս. Հայաստանի կլիման և բնական բուժ-առող.ջարարական պաշարները» հիմնարար աշխ-ը: Տնօրեններ՝ Արշակ Հակոբյան, Ստեփան Ճշմարիտյան, Գերասիմ Աղաջանյան, Յուրի Թունյան, Բենիկ Հարությունյան (2003-ից):

ԿՈՒՐՈՐՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (< գերմ. Kurort, Kur – բուժում և Ort – վայր), բժշկագիտ-յան բաժին. ուսումնասիրում է բնական բուժիչ գործոնները (կլիմ., ջերմաբուժ. ևն), նրանց ազդեցությունն օրգանիզմի վրա և կիրառման եղանակները: ՀՀ-ում կուրորտաբան. աշխ-ները կատարվում են Կուրորտաբանության և ֆիզ. բժշկության ԳՀԻ-ում (հիմն.՝ 1930): Հետազոտվել են «Արզնի» և «Ջերմուկ» հանք. ջրերի միկրոտարրերի տեղաբաշխումն օրգանիզմում: Մշակվել են սրտի արատների աթերոսկլերոզ. կարդիոսկլերոզի բուժման ցուցումներն ու հակացուցումներն Արզնի առող.ջարանում: Բացահայտվել է ֆիզ. մի շարք գործոնների (ինդուկտոթերմիա, դեցիմետրային, սանտիմետրային ալիքներ) դրական ազդեցությունը հիպերտոնիկ հիվանդության սկզբն. փուլերում: Աշխ-ներ են կատարվել ստամոքսաղիք. համակարգի հիվանդությունների ֆիզիոթերմուկաբուժ. բուժման բնագավառում: Ներկայում մշակվում են կանխարգելիչ ու վերականգնող. բժշկության բնագավառների ֆիզ. գործոնների, բնական բուժ-առող.ջարար. միջոցների, առող.ջարար. և բուժիչ սննդի, համաչափ ֆիզ. ակտիվության, էկոանվտանգ տեխնոլոգիաների ներդրման հիմնահարցեր:

ԿՈՒՐՉԱՏՈՎ Բորիս Վասիլևիչ (1905–1972), ռուս. ֆիզքիմիկոս: Ռուսաստանում ճառագայթաքիմիայի հիմնադիրներից է: Ի. Վ. ***Կուրչատովի*** եղբայրը: Աշխ-ները վերաբերում են դիէլեկտրիկների և սեգնետաէլեկտրիկների ֆիզիկային, արհեստ. ճառագայթաակտիվ տարրերի (այդ թվում՝ անդրուրանային) քիմիային, ատոմ. արդ-յան քիմ. խնդիրներին: Բացահայտել է (1935, ուր. հետ) արհեստ. ճառագայթանուկլիդների միջուկ. իզոմերիան: ԽՍՀՄ Պետ. (1949, 1952), Լենինյան (1959) մրց-ներ:

ԿՈՒՐՉԱՏՈՎ Իգոր Վասիլևիչ (1902/03–1960), ռուս. ֆիզիկոս: ԽՍՀՄ-ում ատոմ. գիտ-յան և տեխնիկայի բնագավառներում աշխ-ների կազմակերպիչն ու ղեկ-ը: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1943): Սոց. աշխ. հերոս (1949, 1951, 1954): Ի. Վ. ***Կուրչատովի*** եղբայրը: Ուսումնասիրել է սեգնետաէլեկտրիկները, աշխատակիցների հետ հայտնաբերել միջուկ. իզոմերիան: Կ-ի ղեկավարությամբ կառուցվել է առաջին խորհրդ. ցիկլոտրոնը (1939), հայտնաբերվել ուրանի միջուկների ինքնակամ բաժանման երևույթը (1940), մշակվել նավերի հակաականային պաշտպ-յունը, ստեղծվել Եվրոպայում առաջին միջուկ. ռեակտորը (1946), ԽՍՀՄ-ում 1-ին ատոմ. ռումբը (1953), աշխարհում 1-ին ջերմամիջուկ. ռումբը և ԱԷԿ-ը (1954): Ռուսաստանի ատոմ. էներգիայի ինստ-ի հիմնադիր-տնօրենը (1943–ից, 1969-ին կոչվել է Կ-ի անունով):

ԽՍՀՄ Պետ. (1942, 1949, 1951, 1954), Լենինյան (1957) մրց-ներ:

ԿՈՒՐՉԱՏՈՎԻՈՒՄ (Curchatovium), Ku: Անվանվել է ի պատիվ Ի. Վ. ***Կուրչատովի***: Այսպես է կոչվել ***ռեզերֆորդիում*** տարրը Ռուսաստանում՝ մինչև 1997-ը:

ԿՈՒՐՉԱՏՈՎՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, ռուս. գիտ. կենտրոն, ՌԴ խոշորագույն բազմապրոֆիլ ԳՀԻ: Հիմնադրվել է 1943-ին՝ որպես ԽՍՀՄ ԳԱ № 2 լաբորատորիա (ղեկ.՝ Ի. Վ. ***Կուրչատով***)՝ ատոմ. զենք ստեղծելու համար: XXI դ-ի սկզբին Կ. ի-ի գիտատեխ. գործունեության հիմն. ուղղություններն ընդգրկել են ֆիզիկայի, ատոմ. էներգետիկայի, նանոտեխնոլոգիայի, տեղեկատվ. տեխնոլոգիաների և այլ բնագավառների խնդիրների լայն շրջան:

ԿՈՒՐՊԻՆՍԿԻ (Kurpinski) Կարոլ Կազիմեժ (1785–1857), լեհ կոմպոզիտոր, դիրիժոր: Ազգ. օպերայի («Կրակովցիներ և լեռնցիներ», 1816, ևն) հիմնադիրներից: Հեղինակ է նաև բալետների, սիմֆ. և դաշնամուր. գործերի, հեղ. երգերի («Վարշավյանկա 1931 թվին» ևն):

ԿՈՒՐՄ, 1. գին, որով գնում և վաճառում են բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր: 2. **Կ. արժութային**, արտարժույթի միավորի դիմաց հայրեն. արժույթով վճարված գին, որով մեկ երկրի արժույթը փոխանակվում է այլ երկրի արժույթով:

ԿՈՒՐՄԱՆՈՎ Անդրեյ Լվովիչ (1902–1999), ռուս ֆիզիոլոգ: ՌԳԱ (1991, ԽՍՀՄ ԳԱ՝ 1953-ից), ՌԳԱԱ (1991, ՀամԳԱ՝ 1985-ից) ակադ.: Սոց. աշխ. հերոս (1969): Աշխ-ները վերաբերում են ածխաթթուների յուրացմանը, աղաղանյութերի քիմիզմին և փոխանակությանը, բուս. բջջի ֆերմենտարանության, բույսերում օրգ. նյութերի տեղափոխման և կուտակման հարցերին:

ԽՍՀՄ ԳԱ Մ. Վ. Լոմոնոսովի անվ. ոսկե մեդալ (1984):

ԿՈՒՐՄԱՎԻ Աբդ ան-Նասիր (1776/77–1812), թաթար աստվածաբան և իրավագետ, Վոլգա-Ուրալյան տարածաշրջանում մահմեդ. բարեփոխումների նախակարապետը: Ենթարկվել է ուլեմների հալածանքներին ավանդ. ***ղալամի*** քննադատության համար: Կ-ի գաղափարները XIX դ-ի 2-րդ կեսին զարգացրել են ջադիդիզմի ներկայացուցիչները:

ԿՈՒՐՄԱ, ք. ՌԴ-ում՝ Սեյմ գետի ափին, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 431,1 հզ. (2013): Երկթղ. հանգույց է: Հիմնադրվել է IX դ-ում՝ որպես հս. ցեղերի ամրոց:

ԿՈՒՐՄԱԿԻ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ ՍՐԲԱՊԱՏԿԵՐ, Աստվածամոր հրաշագործ կերպար, որին պաշտում է ՌՈՒԵ: Ըստ ավանդության՝ հայտնաբերել են 1295-ին Կուրսկի մերձակայքում՝ ծառի արմատի տակ (որի համար կոչվում է նաև արմատական): 1597-ին այդ տեղում հիմնադրվել է Աստվածածնի Ծննդյան անապատը: 1618-ից սրբապատկերը եղել է Կուրսկում, 1920-ից՝ Ռուսաստանից դուրս է տարվել, 1950-ից՝ ԱՄՆ-ում (1957-ից՝ Նյու Յորքի Քնամենսկի տաճարում):

ԿՈՒՐՄԱԿԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1943, ռազմավար. պաշտպ. (հուլիսի 5–23) և հարձակող. (հուլիսի 12–օգոստ. 23) գործողությունների ամբողջություն: ՀՄՊ-ի ժամանակ՝ Կուրսկի ելուստի շրջանում:

Հուլիսի պաշտպ. մարտերում Կենտր. և Վորոնեժի ռազմաճակատների (բանակների գեն–ներ՝ Կ. Կ. Ռոկոսովսկի և Ն. Ֆ. Վատուտին) զորքերը հետ են մղել գերմ. «Հարավ» և «Կենտրոն» բանակախմբերի (գեն–ֆլդմ–ներ Հ. Գ. ֆոն Կլյուգե և Է. ֆոն Մանշտեյն) խոշոր հարձակումը: Հուլիս–օգոստ–ին Կենտր., Վորոնեժի, Տափաստան. (գեն–գնդ. Ի. Ս. Կոնև), Արմ. (գեն–գնդ. Վ..Դ. Սոկոլովսկի), Բրյանսկի (գեն–գնդ. Մ. Մ. Պոպով) և Հվ–արմ. (բանակի գեն. Ռ. Յ. Մալինովսկի) ռազմաճակատների զորքերն անցել են հակահարձակման, ջախջախել թշնամու մոտ 30 դիվիզիա և ազատագրել Օրյոլը, Բելգորոդը (օգոստ. 5–ին), Խարկովը (օգոստ. 23–ին): Կ. ճ. ԵՀՊ–ի ամենախոշոր և որոշիչ ճակատամարտերից էր (երկու կողմից մասնակցել է շուրջ 4 մլն մարդ), որտեղ նախաձեռնությունը վերջնականապես անցել է խորհրդ. զորքերին, իսկ Գերմանիան և նրա դաշնակիցներն անցել են պաշտպ. գործողությունների:

ԿՈՒՐՍԿԻ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԱՆՈՄԱԼԻԱ, խոշոր երկաթահանք. ավազան ՌԴ Կուրսկի, Բելգորոդի և Օրլովի մարզերի տարածքներում: Բացվել է 1931–ին: Տարածքը՝ 120 հզ. *կմ*^{2}: Ընդհ. պաշարը՝ 44,6 մլրդ *տ*, երկաթ. քվարցիտները՝ 18,5 մլրդ *տ*:

ԿՈՒՐՍԿԻ ՄԱՐԶ, վտմ ՌԴ–ում՝ Արևմտասիբիր. դաշտավայրի հվ–ում: Ներառված է Ուրալի դաշն. օկրուգի կազմում: Տարածքը՝ 71,5 հզ. *կմ*^{2}, բն.՝ 870 հզ. (2015): Վարչ. կենտրոնը՝ *Կուրսկ*: Բաժանված է 28 վարչատարածք. շրջանների, ունի 10 քաղաք, 22 քտա:

ԿՈՒՐՍՈՐ (անգլ.՝ cursor – ցուցիչ), ցուցասարքի (դիսփլեյ) էկրանի վրա համակարգչի վերարտադրած շարժ. նշան, որը նշում (նույնականացնում) է էկրանի վրայի աշխ. կետը:

ԿՈՒՐՏԵԱ ԴԵ ԱՐԳԵՇ, ք. Ռումինիայում՝ Հվ. Կարպատների հվ. լ–ճայուղում՝ Արճեշ գետի ափին: Կլիմ. առողջարան է և զբոսաշրջության կենտրոն: Հիմնադրել են Վանա լճի ափամերձ Արճեշ ք–ից գաղթած հայերը XIII դ–ում և հայրենի քաղաքի անունով կոչել նոր բնակավայրն ու մոտակա գետը: Բնակավայրում ռումին իշխանները կառուցել են ամրոց (XIII դ.), ապա՝ պալատ՝ «կուրտեա» (XIV դ., պահպանվել են ավերակները), Սբ Նիկողայոս եկեղեցին (XIV դ., որմնանկարներ): 1330–ից հիշատակվում է որպես քաղաք: Հայերի մի մասը 1350–ին տեղափոխվել է հարևան Տրլմաչ բնակավայր: 1370–ին Արճեշից հայերի նոր խումբ է գաղթել և հաստատվել Կ. դե Ա–ում: Եղել է Վալախիայի իշխանների նստավայրը:

ԿՈՒՐՏԻԿՅԱՆ Ստեփան Հարությունի (1863–1944), լեզվաբան, թարգմանիչ, մանկավարժ: Հեղինակ է «Օսմանեան տառաչափութիւն» (1901) աշխ–յան, «Հիշողություն» (թուրք., 1929) բանաստեղծությունների ժող–ի: Կատարել է նաև թարգմ–յուններ:

ԿՈՒՐՏԻԿՅԱՆ Ստեփան Միհրանի (1908–1986), գրող, հրապարակախոս, խմբ.: ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1975): 1926–27–ին՝ *«Աշխատանք»* (Սալոնիկ) համայնավար. թերթի խմբ.: 1927–ին հայրենադարձել է: 1930–32–ին՝ *«Ավանգարդ»* և «Երիտասարդ բոլշևիկ», 1962–82–ին՝ *«Սովետական գրականություն»* և այլ պարբ–ների խմբ.: ՀՄՊ–ի տարիներին (1941–45)՝ զինվ. թղթակից: Հեղինակ է «Լեռնաշխարհի դուստրը» (1947), «Հայրենի լեզենդներ» (1957), «Անդալուզյան լեռներում» (1966), «Կոմիտասյան ղողանջներ» (1969), «Լուսաշխարհ հանիմ գիմ գութան» (1974), «Իմ կյանքի ճանապարհին» (1984) պատմվածքների, ակնարկների, վիպակների, լեգենդների, հուշերի, «Գնդակահարեք, ես ոչինչ չգիտեմ…» (1985) վավերագր. վիպակների ժող–ների:

ԹՄՄ 1–ին կարգի մրց. («Եղեռնապատում» շարքի համար, 1965):

ԿՈՒՐՏԻԿՅԱՆ Ստեփան Տիգրանի (ծ. 1946), ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դ–ր (1998), պրոֆ. (2014): Աշխ–ները վերաբերում են հեմոպրոտեինների ակտիվ կենտրոնը մոդելավորող մետաղապորֆիրինների կոորդինացիոն ոլորտում ընթացող շարժընթացներին և ռեակցիաներին: ՀՀ նախագահի (2015), Հայերի համաշխ. կոնգրեսի և ՀՀ ԳԱԱ համատեղ (2014) մրց–ներ:

ԿՈՒՐՏԻՈՍ Ռուֆոս Քվինտոս (Curtius Rufus Quintus), I դ–ի հռոմեացի պատմիչ: Հեղինակ է «Մեծն Ալեքսանդր Մակեդոնացու պատմության» (գիրք 1–10, հայ. ոչ ամբողջ. թարգմ.՝ 1987), որի առաջին 2 գրքերը կորել են, մեզ հասած 8 գրքերում շարադրել է *Ալեքսանդր Մակեդոնացու* գործունեությունը՝ մ. թ. ա. 333–ից մինչև նրա մահը՝ մ. թ. ա. 323–ը: Տեղեկություններ է հաղորդում մ. թ. ա. IV դ–ի Հայաստանի, հայկ. բանակի (որը, ըստ Կ. Ռ–ի, Արևելքի 3–րդ խոշոր ուժն էր) վերաբերյալ:

ԿՈՒՐՏԻՈՒՍ (Curtius) Էռնստ (1814–1896), գերմանացի պատմաբան, հնագետ: Է. *Կուրցիուսի* պապը: Օլիմպիայում հնագիտ. պեղումների (1875–81) ղեկ.: Գլխ. աշխ–ները վերաբերում են Հին Հունաստանի պատմությանը, տեղագրությանը և հնագիտ–յանը:

ԿՈՒՐՏԻՈՒՍ Էռնստ Ռոբերտ (1886–1956), գերմանացի բանասեր: Է. *Կուրցիուսի* թողը: «Եվրոպական գրականությունը և լատինական միջնադարը» (1948) աշխ–յան մեջ հավաստել է գր. ավանդույթի անընդհատությունը, որը պայմանավորված է բառային պատրաստի բանաձևերի (տոպոսներ) համաներկայությամբ ու ընդհանրությամբ, որոնք գրկ–ը փոխառել է հիմնականում հռետոր. արվ–ից:

ԿՈՒՐՏԻՈՒՍ Թեոդոր (1857–1928), գերմանացի քիմիկոս: 1882–ին ստացել է 1–ին սինթետիկ պեպտիդը՝ բենզոիլգլիցիլգլիցինը: Առաջարկել է էսթերներից՝ պեպտիդների (1883), ազիդներից ամինաթթուների (1902) սինթեզի եղանակներ: Հայտնագործել է (1894) կարբոնաթթուների ազիդների փոխարկումն առաջնային ամինների (**Կուրցիուսի ռեակցիա**): Ուսումնասիրելով երկազոէսթերները՝ առաջինն է ստացել (1887–90) հիդրազին, հիդրազիդներ, ազիդներ, ազոտաջրածնական թթու:

ԿՈՒՐՑՀԱՐ (< գերմ. kurz – կարճ և Haar – մազ, բուրդ), կարճամազ որսական շների ցեղ: Բուծվել են XX դ–ի սկզբին Գերմանիայում:

ԿՈՒՐՈՒ (Korou), ֆրանս. տիեզերակայան Գվիանայում՝ Կուրու ք–ի մոտ: 1968–ից կատարվում են հրթիռների փորձն. արձակումներ: ԵԱՀ–ի առաջին փորձն. արձակումը՝ 1973–ին:

ԿՈՒՐՈՒԹՅՈՒՆ, **ամավրոզ** (հուն.՝ amaurosis – մթագնում, կուրություն), 2 աչքի տեսողության կորուստը գլաուկոմայի, տրախոմայի, վնասվածքի, շաքարախտի և այլ դեպքերում:

ԿՈՒՐՈՒԼԹԱՅ, **Կուրուլտայ**, կառավարող վերնախավի համագումար թուրք. և մոնղոլ. պետություններում՝ պետ. կառավարման կարևորագույն խնդիրների, արտաքին քաղ–յան, գահաժառանգության և այլ հարցերի լուծման համար: «Կ.» բառը ժամանակակից թյուրք. լեզուներում օգտագործվում է տարբեր քաղ. և հաս. կազմ–յունների ու ֆորումների նշանակությամբ: Կ. է ՌԴ մի քանի ԻՀ–ների իշխանության օրենսդիր (ներկայացուցչ.) մարմինների պաշտոն. անվանումը:

ԿՈՒՒՑ Վլադիմիր Պետրովիչ (1927–1975), ուկրաինացի մարզիկ (աթլետիկա): ԽՍՀՄ ս. վ. վ. (1954): Օլիմպ. խաղերի (1956)՝ 5000 *մ* և 1000 *մ* վազքի, Եվրոպայի (1954)՝ 5000 մ վազքի չեմպիոն, այդ տարածություններում՝ աշխարհի բազմակի ռեկորդակիր (1954–65):

ԿՈՒՈՒՍԱՒԿ (Kuusik) Տիիթ (Դիտրիխ, 1911–1990), էստոնացի երգիչ (բարիտոն): ԽՍՀՄ ժող. արտիստ (1954): 1944–88–ին՝ «Էստոնիա» ՕԹԹ–ի մեներգիչ (Մեֆիստոֆել՝ Շ. Գունոյի «Ֆաուստ», Ռիգոլետտո՝ Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», ևն):

Էստ. ԽՍՀ (1949, 1959, 1967), ԽՍՀՄ (1950, 1952) Պետ. մրց–ներ:

ԿՈՒՈՒՍԲԵՐԳ (Kuusberg) Պաուլ Ավգուստի (1916–2003), էստոնացի գրող: Էստոնիայի ժող. գրող (1972): Սոց. աշխ. հերոս (1984): Հեղինակ է «Էննա Կալմի երկրորդ «Ես»–ը» (1960), «Ամառվա թունդ ժամանակը» (1966), «Մեկ գիշեր» (1972), ՀՄՊ–ի մասին պատմող «Պատահար՝ Անդրես Լապետեուսի հետ» (1961), «Անձրևի կաթիլներ» (1976) վեպերի, «Օյ, ինչ փնթի է մեր կատուն» (1980), «Խայտառակություն ծերանոցում» (1991) պատմվածքների ժող–ների: Հայ. հրատարակվել է «Ազատության խճուղի» (1974) վեպը:

ԿՈՒՈՒՍԻՆԵՆ (Kuusinen) Օտտո Վիլհելմ (1881–1964), ֆինն քաղ. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1961): ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1958): 1905–ից՝ Ֆինլանդիայի սոցիալ–դեմոկրատ. կուսյան ձախ թևի առաջնորդ, 1911–17–ին՝ գործկոմի նախագահ: Կոմինտերնի գործկոմի քարտուղար (1921–39, գլխ. քարտուղար՝ 1921–22–ին): 1940–56–ին՝ Կարելա–ֆինն. ԽՍՀ ԳԽ նախագահության նախագահ: 1957–ից՝ ԽՄԿԿ ԿԿ քարտուղար:

ԿՈՒՔՔԻ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ՎԱՆՔ, *Հազարթաղուրաց վանք*, XII դ–ի ճարտ. համալիր պատմ. Շահապոնք գվո–ի Կուքի գ–ի մոտակայքում: Պահպանվել են միայն ավերակները: Համալիրի տարածքում Պռոշ իշխանի որդի Պապաքի կանգնեցրած խաչքարն է (1287), նաև գերեզմանոցը: Վանքում ընդօրինակել են ձեռագրեր:

ԿՈՒՆՑՏԻՆ Բորիս Ալեքսեևիչ (1892–1953), ռուս. հնագետ, ազգագրագետ: Վրաստանի ԳԱ ակադ. (1946): Աշխ–ները վերաբերում են Կովկասի (Էնեոլիթից մինչև վաղ միջնադար), Հվ. Թուրքմենչայի, Դրիմի հնագիտ–յանը: Առաջինն է բնութագրել *Կուր–Արաքսյան մշակույթը*: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942):

ԿՈՒՖՈՒՈՐ (Kufuor) Ջոն Ագիեկում (ծ. 1938), Գանայի նախագահ՝ 2001–09–ին: Մինչև 2000–ը՝ Գանայի ներկայացուցիչը ՄԱԿ–ում: 2003–05–ին՝ Արմ. աֆրիկ. երկրների տնտ. ընկերակցության, 2007–08–ին՝ Աֆրիկ. միության նախագահ:



Հ, հայ. այբուբենի 16-րդ տառը, անվանումը՝ հո: Ունի ***գրչագիր***, ***երկաթագիր***, ***բոլորգիր***, ***շղագիր***, ***նոտրգիր*** տառատեսակները: Հայ-ի կոկորդային պարզ շփական խուլ բաղաձայն հնչյուն (հնչույթ) է: Թվային արժեքը՝ 70:

ՀԱԱԳԱ (‘s-Gravenhage, Den Haag), ք. Նիդեռլանդներում, Հվ. Հոլանդիա պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 500 հզ. (2011): Նվիևգստ՝ Հս. ծովի ափին: Նիդեռլանդների Կառ-յան և արքունիքի նստավայրը: Հ-ում է ՄԱԿ-ի միջազգ. դատարանի նստավայրը: Տնտ. կարևոր կենտրոն է: Հ-ում կենտրոնացված են առևտր. և արդ. մի շարք ֆիրմաների վարչություններ: Գործում են Քաղաք., Մամուլի միջազգ., Փոստի և այլ թանգարաններ, Նկարների թագավոր. կաբինետը: Հիշատակվում է 1242-ից (քաղաքը՝ XIX դ-ի սկզբից): Կենտրոնում է «Ներքին բակ» պալատների համալիրը (XIII–XVII դդ.), Ասպետների դահլիճը (մոտ 1280), Մաուրիցհյոյս (1633–1635), «Հյոյս-տեն-Բոս («Տուն անտառում», 1645–47) պալատները, վարչ. շենքեր ևն:

ՀԱԱԳԱՅԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ 1922, տեղի է ունեցել (հունիս 15–հուլիս 19) Հաագայում (՝Նիդեռլանդներ)՝ 1922-ի ***Ջենովայի խորհրդաժողովի*** որոշմամբ, 27 եվրոպ. երկրների (բացի Գերմանիայից) մասնակցությամբ: Խորհրդ. Ռուսաստանը հասել է միջազգ. ճանաչման և ստացել վարկեր տնտ-յան վերականգնման համար: Եվրոպ. երկրների ներկայացուցիչները պահանջել են առանց նախապայմանների վերադարձնել Ռուսաստանում իրենց քաղաքացիների ազգայնացված սեփականությունը կամ վճարել դրամ. փոխհատուցմամբ: Բանակցությունները ձախողվել են, խորհրդ. պատվիրակությունը լքել է խորհրդաժողովը:

ՀԱԱԳԱՅԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ, 1. միջազգ. համաձայնագրեր պատերազմի օրենքների ու սովորույթների մասին՝ ընդունված Հաագայի 1-ին (1899, 3 համաձայնագիր) և 2-րդ (1907, 13 համաձայնագիր) խաղաղության խորհրդաժողովներում: Պարունակում են դրույթներ միջազգ. վեճերի խաղաղ կարգավորման, չեզոքության, խաղաղ բնակչության պաշտպ-յան, ռազմագերիների և հիվանդների ռեժիմի ևնի մասին: 2. 1954-ի համաձայնագիրը զինված բախման ժամանակ մշակութ. արժեքների պահպանության մասին է: 3. Միջազգ. մասնավոր իրավունքի մասին համաձայնագրեր՝ 1902–05, 1954, 1955, 1956, 1961 ևն, որոնց կիրառումը՝նվազ կարևոր լինելու պատճառով դադարեցվել է:

ՀԱԱՋ (de Haas) Վանդեր Յոհաննես դր (1878–1960), նիդեռլանդացի ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են ցածր ջերմաստիճանների ֆիզիկային և ջերմահաղորդականությանը: Հայտնաբերել է մի քանի էլ. և մագնիս. երևույթներ ցածր ջերմաստիճաններում (անվանել են՝նրա պատվին):

ՀԱԱՌԼԵՄ (Haarlem), ք. Նիդեռլանդներում, Հս. Հոլանդիա պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 156,7 հզ. (2014):

ՀԱԲ, պինդ, բաժնավորած դեղաձև. ստանում են պինդ նյութի փոշու կամ հատիկների մամլմամբ: Լինում են կլոր, ձվաձև թիթեղների ձևով՝ հարթ կամ երկուռուցիկ մակերևույթով:

ՀԱԲԱ. (Hába) Ալոիս (1893–1973), չեխ կոմպոզիտոր, տեսաբան: 1920–30-ական թթ-ի ավանգարդ երաժշտության ներկայացուցիչ: Մշակել է քառորդ տոն համակարգի (նաև 1/3-1/6 և 1/12) սկզբունքները: Հեղինակ է 3 օպերայի («Մայրը», 1930, ևն), նվագախմբ., կամեր-գործիք., դաշնամուր., վոկալ և այլ երկերի:

ՀԱԲԱՆԴ, Աբանդ, Հանբանդ, 1. գվո Սյունիք նահանգում: Արմ. մասը մոտավորապես համապատասխանում է ՀՀ Սյունիքի մարզի մի մասին՝ Գորիսի շրջանին: Արլ-ից (Արցախի լ-ներով) սահմանակից էր Արցախին, հվ-ից (Բարգուշատ և Ողջի գետերի ջրբաժան լ-ներով)՝ Սյունիքի Բաղք, արմ-ից՝ Ծղուկք, հս-ից՝ Աղահեճք գավառներին: Ըստ ավանդության՝ Սյունյաց նախարար. տոհմի նահապետ Զագիկը Հ-ի մի ձորում կառուցել է Զագեձոր (Հաբանդա) բերդը, որից առաջացել է գավառի 2-րդ՝ Զագեձոր (ավելի ուշ՝ Զանգեզուր) անվանումը:

2. Գվո՝ Աղվանքում, հավանաբար՝ Ուտանի մարզպանությունից կամ Չողից (հետագայում՝ Դարբանդի մարզ) հվ-արմ., հվ-արլ-ում սահմանակցել է Բաղասական կամ Դաշտի Բազկան նահանգ-ին, հվ-ում՝ Գեղավու, Շաքե նահանգ-ներին: Հիշատակվում է միայն VII դ-ի «Աշխարհացոյց»-ում:

ՀԱԲԱՆԴ ՄՅՈՒՍ, գվո Արցախ նահանգ-ում՝ Կարկառ գետի աջափնյակից մինչև Դիզափայտի լ-ները և Քիրսի լ-շղթայից մինչև Մուխանք դաշտի արմ. եզերքը: Տարածքը մոտավորապես համապատասխանում է ներկայի ԼՂՀ Մարտունու և Հադրութի շրջաններին: Ուշ միջնադարում Հ. Մ. վարչականորեն բաժանվել է Դիզակի (հվ. մասը) և Վարանդայի (հս. մասը) գվո-ների՝ համանուն մելիքություններով, որի պատճառով մոռացվել է գվո-ի հնագույն անվանումը:

ՀԱԲԱՆԵՐԱ (իսպ.՝ habanera, < La Habana – Հավանա), կուբայական ժող. պար և երգ: Ծագել է ***կոնտրդանսից***: Երաժշտ. չափը՝ 2/4, տեմպը՝ հանդարտ: Առավել տարածվել է XIX դ-ի 2-րդ կեսին Լատ. Ամերիկայում: Հ. իրենց գործերում օգտագործել են Ժ. Բիզեն, Է. Շաբրիեն, Կ. Դեբյուսին, Մ. Ռավելը և ուր.:

ՀԱԲԲԱՐԴ (Hubbard) Լաֆայետ Ռոնալդ (1911–1986), ամերիկացի գրող: Հայտնի է որպես կրոն. նոր շարժումների՝ դիանեթիկայի (հոգևոր առողջություն) և սայենթոլոգիայի (գիտելիքաբանություն) հիմնադիր: Հեղինակ է արկած., գիտաֆանտաստիկ, հոգեբ., փիլ-կրոն. գործերի (մոտ 600):

ՀԱԲԵԱՍ ԿՈՐՊՈՒՍ ԱԿՏ (Habeas Corpus Act), Մեծ Բրիտանիայի հիմն. սահմանադր. ակտերից (1679): Երաշխավորում է քաղաքացիների դատավար. իրավունքը, անձի անձեռնմխելիությունը, սահմանում է ձերբակալության և մեղադրյալին դատարան կանչելու կանոնները:

ՀԱԲԵԹ, Յաբեթ, Աբեթ (եբր.՝ Jafet – ընդարձակություն կամ գեղեցկություն), ըստ Աստվածաշնչի՝ ***Նոյի*** կրտսեր որդին, ***Քամի*** և ***Սեմի*** եղբայրը: Հ-ի որդիները համարվում են հնդեվրոպ. մի շարք ժողդների նախահայրերը: Հայկ. ավանդությունը Հ-ի ավագ որդի Գամերի կրտսեր որդուն՝ ***Թորգոմին***, համարում է հայոց անվանադիր նախնի ***Հայկի*** հայրը: Այդ պատճառով հայ մեկնիչները Հ-ի անունով հայերին անվանում են «Յաբեթեան կամ Յաբեթական տոհմ», «Աբեթածին կամ Աբեթեան ազն»:

ՀԱԲԵՇՆԵՐ, տես ***Եթովպացիներ***:

ՀԱԲԵՌԼԱՆԴՏ (Haberlandt), բույսերի գերմանացի ֆիզիոլոգներ, հայր և որդի. **Ֆրիդրիխ Հ.** (1826–1878): Աշխ-ները վերաբերում են օնտոգենեզին և գղտ. բույսերի զարգացման մեջ ֆիզ. գործոնների դերին, վնասատուներից նրանց պաշտպ-յանը, կլիմայավարժմանը, շերամապահությանը: **Գոտլիբ Յոհան Ֆրիդրիխ Հ.** (1854–1945), ՌԳԱ (1924), ԽՍՀՄ ԳԱ (1925) արտ. թղթ. անդամ: Բույսերի անատոմիայում ֆիզիոլոգ. ուղղության հիմնադիրներից. մշակել է բույսերի հյուսվածքների դասակարգումը՝ հիմնված նրանց ֆունկցիաների վրա: Աշխ-ներ ունի նաև տրոպիզմների վերաբերյալ, հայտնաբերել է այսպես կոչված վերքային հորմոններ:

ՀԱԲԵՐ (Haber) Ֆրից (1868–1934), գերմանացի քիմիկոս-անօրգանիկ-տեխնոլոգ: ԽՍՀՄ ԳԱ արտ. պատվ. անդամ (1932): Կիսագործարան. սարքավորմամբ առաջինն է ստացել (1908) հեղուկ ամոնիակ՝ ազոտից և ջրածնից՝ 20 *ՄՊա* ճնշման տակ օսմիումային կատալիզորդով:

Ռազմ. կիրառության թունավոր նյութերի մշակման կազմակերպիչներից է: Նոբելյան մրց. (1918):

ՀԱԲԵՐՄԱՍ (Habermas) Յուրգեն (ծ. 1929), գերմանացի փիլ., սոցիոլոգ: Մշակել է հաղորդակց. գործողության տեսություն (1981): Հեղինակ է «Ճանաչողություն և հետաքրքրություն» (1968) և «Հաղորդակցական գործունեության տեսություն» (1981) աշխ-ների:

«Թեոդոր Ադոռնո» (1980), Լայբնիցի անվ. (1988), «Կլյուգե» (2015) միջազգ. և այլ մրց-ներ:

ՀԱԲԻԱՐԻՄԱՆԱ (Habyarimana) Ժյուվենալ (1937–1994), Ռուանդայի նախագահ՝ 1973–94-ին, վարչապետ՝ 1974-ից: Գենմայոր (1973): 1965–73-ին՝ Ազգ. գվարդիայի նախարար: 1975-ից՝ «Ազգ. հեղ. շարժում հանուն զարգացման» կուս-յան հիմնադիր-նախագահ:

ՀԱԲԻԲ Ասադուլլա (ծ. 1941), աֆղան գրող: Հեղինակ է «Այդին» (1965) ռեալիստ. վիպակի, «Երեք բատրակ» (1966) պատմվածքների, «Նամակներ՝ գրված կարմիր ներկերով» (1983) քնար. գործերի ժող-ների, «Շղթաներ կտրողները» (բեմ.՝ 1975), «Գիշեր և մտրակ» (բեմ.՝ 1985) պիեսների, գրականագիտ. հոդվածների, հրապարակախոս. գործերի:

ՀԱԲԻԲ ԻԲՆ ՄԱՍԼԱՄԱ (617–662), արաբ զորավար, Հվ. Ասորիքի կառավարիչ: Մասնակցել է Բյուզանդիայի դեմ պատերազմներին: 654-ին արշավել է Հայաստան: Երաշխավորել է հայ նախարարների հողատիր. իրավունքները՝ հարկ վճարելու պայմանով:

ՀԱԲԻԲԻ (Habibie) Բահարուդդին Յուսուֆ (ծ. 1936), Ինդոնեզիայի նախագահ՝ 1998–99-ին: 1999-ին նախաձեռնել է Արլ. Թիմորի անկախության հանրաքվեի անցկացումը: 1998-ի մարտ–մայիսին՝ փոխնախագահ՝ *Սուհարտոյի* օրոք:

ՀԱԲԻԲԻ Էմիլ (1921–1996), իսրայելացի արաբագիր գրող, հրապարակախոս: «Տարօրինակ իրադարձություններ՝ կապված Սաիդ Աբու ան Նախսա ալ Մութաշաիլի անհետացման հետ» (1972) գրոտեսկ. ֆանտաստիկ վիպակում, «Էշն էշի քուռակ է» (1980), «Ախտիյա» (1985) պատմվածքների ու վիպակների ժող-ներում և այլ գործերում դատապարտել է պետ. քաղ-յունը պաղեստինցի արաբների նկատմամբ:

ՀԱԲԻԲՈՒԼԱ (մոտ 1872–1919), աֆղան էմիր՝ 1901-ից: Աբդ ալ-Ռահման էմիրի որդին: Կառավարման սկզբում փորձել է աշխարհիկ բնույթի բարեփոխումներ իրականացնել, սակայն Մեծ Բրիտանիայի և ներքին հակազդեցության ճնշման տակ հանդես է եկել երիտաֆղանների դեմ: Սպանվել է որսի ժամանակ:

ՀԱԲԻԲՈՒԼԱԵՎ Զուխուր Նուրջանի (ծ. 1932), տաջիկ նկարիչ: Տաջիկստանի ժող. նկարիչ (1987): Հեղինակ է ժանր. թեմատիկ նկարների, բնապատկերների, նատյուրմորտների («Պամիրյան նատյուրմորտ», 1964, «Ծարավ», 1972, ևն): Տաջիկստանի զինանշանի (1993) հեղինակներից է:

«ՀԱԲԻՄՈՒՆ» (երբ. – ամբիոն սինագոգում, նաև բեմ), թատրոն (նախապես՝ ստուդիա): Հիմնադրվել է 1917-ին Սոսկվայում՝ Ն. Յեմախի, Խ. Ռովինի, Մ. Գնեսինի և ուր. նախաձեռնությամբ: 1917–22-ին գեղ. ղեկ.՝ Ե. Վախթանգով (բեմադրել է Ս. Անսկու «Հադիբուկ», 1922, նկարիչ՝ Գեորգի *Յակուլով*, XX դ-ի թատեր. արվ-ի գլուխգործոցներից): 1930-ից «Հ.», որպես պետ. թատրոն, գործում է Թել Ավիվում:

ՀԱԲԻՏՈՒՍ (լատ.՝ habitus – արտաքնատեսք), կենդ., բուս. օրգանիզմների և մարդու արտաքին կերպարանքը, որը ձևավորվում է ձևաբան. արտաքին հատկանիշների ամբողջությամբ: Մարդու դեպքում՝ նաև հաս. հարաբերությունների, գործելաոճի միջոցով:

ՀԱԲԼ (Hubble) Էդվին Պաուել (1889–1953), ամերիկացի աստղագետ: Արտագալակտիկ. աստղագիտ-յան հիմնադիրը: Ապացուցել է արտագալակտիկական միգամածությունների (գալակտիկաներ) աստղ. բնույթը, գնահատել մի քանիսի միջև եղած հեռ-յունը, մշակել նրանց կառուցվածք. դասակարգման հիմունքները, բացահայտել (1929) գալակտիկաների՝ իրարից հեռանալու (ցրվելու) օրինաչափությունը (**Հաբլի օրենք**):

ՀԱԲԼԻ ՀԱՍՏԱՏՈՒՆ, H, հաստատուն՝ գալակտիկաների կույտերի ցրման v արագությունների և մինչև այդ գալակտիկաները եղած r հեռ-ների գծային կապն արտահայտող *Հաբլի օրենքում*. $v = H \cdot r$, որտեղ $H \approx 70–80$ *կմ/(վ × ՄՊկ)*:

ՀԱԲԼԻՅԻԱ (Hablitzia), թելուկազգիների ընտանիքի բազմամյա, սողացող խոտաբույսերի միատիպ կովկաս-փոքրասիական ցեղ: Հայտնի է 1 տեսակ՝ Հ. կուսարմատանմանը: Տարածված է ՀՀ Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի և այլ մարզերում: Աճում է անտառներում, ստվերոտ վայրերում, ժայռերի մեջ: Երկ.՝ մինչև 2 *մ*: Գեղազարդիչ է:

ՀԱԲՍԲՈՒՐԳՆԵՐ (Habsburger), թագավոր. հարստություն Ավստրիայում (1282–ից՝ հերցոգներ, 1453-ից՝ էրցհերցոգներ, 1804-ից՝ Ավստրիայի կայսրեր): 1526-ին միավորելով Չեխիան, Հունգարիան (որտեղ կրում էին թագավորի տիտղոս) և այլ տարածքներ՝ դարձել են հսկայածավալ բազմազգ պետության կայսրեր (1867–1918-ին՝ Ավստրո-Հունգարիա): Եղել են Սրբազան Հռոմ. կայսրության կայսրեր (1438–1806-ին, բացառությամբ՝ 1742–45-ի), ինչպես նաև Իսպանիայի թագավորներ (1516–1700): Առավել հայտնի ներկայացուցիչներն են Կառլոս V-ը, Ֆիլիպ II-ը (Իսպանիա), Մարիա Թերեզան, Իոսիֆ II-ը, Ֆրանց Իոսիֆ I-ը:

ՀԱԳԱՐ (երբ. – պանդուխտ), արաբների նախահայր *Իսմայելի* մայրը՝ ըստ աստվածաշնչյան ավանդության: Եղել է *Սառայի* եգիպտուհի աղախինն ու *Աբրահամի* հարճը: Հ-ից և Աբրահամից ծնված որդուն՝ Իսմայելին, Սառան որդեգրել է, ապա արտաքսել Եգիպտոս, որտեղ դարձել է արաբ. ցեղերի նախահայրը: Այդ պատճառով էլ Հ-ի և Իսմայելի սերունդներին անվանել են «հագարացիներ», «իսմայելցիներ»:

ՀԱԳԱՐՈՒ, Հակարի (պատմ.՝ Աղվան, Աղավնո), գետ Հայկ. լ-աշխարհի հս-արլ-ում, Որոտանի ձախ, ամենամեծ վտակը: Կազմավորվում է Շողավանք (Շալվա) և Հոչանց (Հոչաս) վտակների միախառնումով: Երկ.՝ 113 *կմ*, ավազանը՝ 2570 *կմ²*, ջրի ծախսը՝ 18,7 *մ³/վ* (Բերձոր), հոսքը՝ 588, 7 *մլն մ³*:

ՀԱԳԳԱՐԴ (Haggard) Հենրի Ռայդեր (1856–1925), անգլիացի գրող, իրավաբան, հողագետ: Հեղինակ է «Սողոմոն թագավորի հանքերը» (1885, հայ.՝ 1965), «Մոնթեսումայի դուստրը» (1893, հայ.՝ 1969), «Գեղեցկուհի Մարգարետը» (1907, հայ.՝ 1966), «Փոթորկի զավակը» (1913), «Սուրբ ծաղիկ» (1915) և արկած. ու պատմ. այլ վեպերի: Հայ. հրատարակվել են նաև «Աշխարհի սիրտը» (1930), «Թափառաշրջիկին մանյակը» (1932), «Բլոսհոլմի տիրուհին» (1972), «Մէրբաի» (ա. թ.) վեպերը:

ՀԱԳԵՄԱՅՍՏԵՐ (Hagemeister) Ավգուստ Հենրիխ Անտոն Յուլիուս ֆոն (1806–1878), ռուս. պետ. գործիչ, տնտեսագետ (ծագումով՝ գերմանացի): Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1855): 1862-ից՝ սենատոր: Հեղինակ է «Սիբիրի վիճակագրական ակնարկ» (հ. 1–3, 1854) աշխ-յան: Դեմիդովյան մրց. (1832):

ՀԱԳԵՄԱՅՍՏԵՐ Լյուդվիգ Կառլ Ավգուստ (1780–1833), գերմանացի ռազմ. գործիչ, 1-ին դասի կապիտան (1830): 1806–10-ին ռուս. «Նևա» նավով (հրամ.՝ Հ.) նավարկել է Կրոնշտադից Նովոարխանգելսկ (այժմ՝ ք. Սիտկա)՝ Հնդ. (Ավստրալիայից հվ.) և Խաղաղ օվկ-ներով («Հագեմայստերի ուղի»): Իրականացրել է շուրջերկրյա ճանապարհորդություններ 1816–19 և 1828–30-ին: Եղել է ռուս. Ամերիկայի գլխ. կառավարիչ (1818): Հ-ի անունով կոչվել են կղզիներ և նեղուց Բերինգի ծովում, լեռներ՝ Ալեքսանդրի կղզեխմբում՝ Ալյասկայի ծոցում, ևն:

ՀԱԳԵՆ (Hagen), ք. Գերմանիայի Հս. Հռենոս-Վեստֆալիա երկրում: Բն.՝ 190,8 հզ. (2010):

ՀԱԳԵՐՈՒՓ (Hagerup) Ինգեր (1905–1985), նորվեգացի բանաստեղծուհի: Հեղինակ է հակաֆաշիստ. և հայրենասիր. թեմաներով «Հետո» (1944), նաև «Դու ուզում էիր, որ ես լինեի այդպիսին» (1950), «Ինչ տարօրինակ է» (1950), «Իմ նավը լողում է հեռու» (1951), «Սրտի խառնարանից» (1964) սիրային բանաստեղծությունների ժող-ների:

ՀԱԳԵՅԱՆ ԳՈԼՈՐՇԻ, քիմ. նույն բաղադրությամբ գոլորշին, որը թերմոդինամիկ. հավասարակշռության մեջ է հեղուկի կամ պինդ մարմնի հետ:

ՀԱԳԵՅԱՆ ԼՈՒԾՈՒՅԹ, լուծույթ, որը հավասարակշռության մեջ է լուծված նյութի ավելցուկի հետ. օր.՝ կերակրի աղի ջր. լուծույթը, որտեղ առկա են նաև նույն աղի բյուրեղները: Հ. լ-ում նյութի կոնցենտրացիան կոչվում է այդ նյութի լուծելիություն տվյալ լուծիչում՝ տվյալ ջերմաստիճանում և ճնշման տակ:

ՀԱԳԵՅԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, *սահմանային միացություններ*, օրգ. միացություններ, որոնց մոլ-ներում ատոմները միացած են միայն պարզ կապերով «բաց» շղթաներում (ալիֆատիկ հագեցած միացություններ) կամ ցիկլերում (ալիցիկլիկ հագեցած միացություններ): Հ. մ. են ալկանները կամ պարաֆինները՝ C_nH_{2n+2} բանաձևով (մեթան՝ CH_4, էթան՝ C_2H_6, պրոպան՝ C_3H_8), ցիկլոալկանները կամ ցիկլոպարաֆինները՝ C_nH_{2n} բանաձևով (ցիկլոպրոպան՝ C_3H_6, ցիկլոհեքսան՝ C_6H_{12}, ևն): Հագեցած ածխաջրածինները պարունակվում են հիմնականում նավթում և բնական գազում:

ՀԱԳԻՆՍ (Huggins) Չառլզ Բրենտոն (1901–1997), ամերիկացի ֆիզիոլոգ-ուռուցքաբան, վիրաբույժ: Բացահայտել է շագանակագեղձի քաղցկեղածին վիրուսները, առաջինը կիրառել հորմոնային բուժումը: Նոբելյան մրց. (1966):

ՀԱԴԵՍ, հանդերձյալ աշխարհի և ննջեցյալների թագավորությունն ու նրա տիրակալը հուն. դից-յան մեջ: *Քրոնոսի* և *Հռեայի* ավագ որդին, *Զևսի*, *Պոսեյդոնի* և *Դեմետրայի* եղբայրը: Հ-ի մասին հին

պատկերացումները մասամբ ներմուծվել են քրիստոնեության մեջ: Արվ–ում Հ. պատկերվել է հզոր այրի կերպարանքով՝ գահին բազմած, երկժանին ձեռքին: Համապատասխանում է հռոմ. Պլուտոնին:

ՀԱԴԻԴ (Hadid) Զահա (ծ. 1950), անգլիացի ճարտ., դիզայներ, նկարիչ: Հետևել է ռուս. կոնստրուկտիվիզմին և սուպրեմատիզմին (Ռոզենթալի ժամանակակից արվ–ի կենտրոն, 2003, Ցինցինատի, ԱՄՆ), շարժման նմանակման ձևերի (Համաշխ. ցուցահանդեսի կամուրջ–տաղավար, 2008, Սարագոսա, Իսպանիա), տարուղղված առանցքների հատման երևույթին (XXI դ–ի ազգ. արվ–ի թանգարան, 2009, Հռոմ):

ՀԱԴԻՍ (արաբ. – պատմվածք), ավանդազրույց Մուհամմեդի գործերի և պատգամների մասին: Հ–ները հետագայում համարվել են հավաստի և դարձել են մահմեդ. ողջ հանրության և յուրաքանչյուր մահմեդականի վարքականոն: Հ–ների հիմն. մասը հյուսվել է VII դ–ի վերջ–VIII դ–ում: Ճշմարիտ համարվածները ընդունվել են *սուննայի* մեջ և ծառայում են որպես մահմեդ. իրավունքի աղբյուր (ֆիքի): Շիաները դրանք անվանում են **ահբար**, որոնցից հավաստի են համարվում իմամների հաղորդածները:

ՀԱԴՐԻԱՆՈՍ (Hadrianus) Պուբլիոս (Ադրիանոս, 76–138), Հռոմի կայսր՝ 117–ից՝ *Անտոնինոսների* հարստությունից: Ուժեղացրել է կայսեր. իշխանությունը և պետության կառավարման համակարգը: Կառուցել է Ադրիանուպոլիս ք–ը, սահմաններին՝ պաշտպանիչ ամրություններով: Հայերի ապստամբությունը (116) և պարթևների հետ ընդհարվելու վտանգը Հ–ին հարկադրել են 117–ին հռոմ. զորքերը դուրս բերել Հայաստանից և ճանաչել Մեծ Հայքի թագավորության անկախությունը:

ՀԱԴՐՈՆԱՅԻՆ ԱՏՈՄ, ատոմանման համակարգ, որտեղ էլեկտրաստատիկ ձգողության ուժերն իրար են կապում ատոմի դրական լիցքավորված միջուկն ու բացաս. հադրոնները (T ⁻, K ⁻ մեզոնները, անտիպրոտոնը ևն): Առաջանում են նյութի մեջ բացասական հադրոնի արգելակման արդյունքում:

ՀԱԴՐՈՆՆԵՐ (հուն.՝ adron – ուժեղ, հզոր), ուժեղ փոխազդեցությունների մասնակցող *տարրական մասնիկների* ընդհ. անվանումը: Հ. են *պրոտոնը*, *նեյտրոնը*, *հիպերոնները*, *մեզոնները*, նաև բոլոր *ռեզոնանսային մասնիկները*:

ՀԱԴՐՈՒԹԻ ԲԱՐԲԱՌ, հայ–ի «ս» ձայուղի բարբառ: Խոսվում է Լ.Ղ.Հ Հադրութի շրջանում: Կատարում է բաղաձայն. համակարգի 1–ին (բ > պ) տեղաշարժը:

ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ, Լ.Ղ.Հ վտմ: Կազմավորվել է 1991–ին՝ Լ.Ղ.ԻՄ–ի համանուն շրջանի հիմքի վրա: 1993–ին շրջանին միացվել է հայկ. ուժերի վերահսկողության տակ անցած Ադրբեջանի նախկին Քաբրայիլի (այժմ՝ Քրական) և Ֆիզուլիի (այժմ՝ Վարանդա) շրջանների մի մասը: Տարածքը՝ 1877 *կմ*²: Վարչ. կենտրոնը՝ ք. Հադրութ: Բն.՝ 12,3 հգ. (2012):

ՀԱԴՖԻԼԴ (Hadfield) Ռոբերտ Աբբոտ (1858–1940), անգլիացի մետալագետ: ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1933): Աշխ–ները վերաբերում են ջերմ. մշակման և մաշակայուն հատկություններով մանգան. պողպատի՝ Հադֆիլդի պողպատի (11–14,5 % Mn, 0,9–1,3 % C) արտադր–յան հարցերին:

ՀԱՋԱՋ (Lycium), **մոռամբ**, մորմազգիների ընտանիքի բազմամյա փշոտ թփերի ցեղ: Հայտնի է մոտ 100 տեսակ՝ բարեխառն և արևադարձ. գոտիներում, գլխավորապես՝ Հվ. Ամերիկայում, հանդիպում է նաև Վոլգայի ստորին ավազանում, Կովկասում, Միջին Ասիայում, անապատներում և տափաստաններում: Երբեմն Հ. անվանում են ոլոռ ցեղի բույս (ոլոռնածաո): ՀՀ–ում հանդիպում է 4 տեսակ (սեղմված, անատոլ., բարբարոս., ռուս.)՝ Տավուշի և Սյունիքի մարզերի ստորին լեռն. գոտիներում. ցողունի բարձր.՝ մինչև 2,5 *մ*: Որոշ տեսակներ դեղաբույսեր են, գեղազարդիչ: Անատոլ. Հ. (Սյունիքի մարզում) գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

«ՀԱՋԱՐ ՈՒ ՄԵԿ ԳԻՇԵՐ», արաբ. միջնադար. գր. հուշարձան, հեքիաթների և զրույցների ժող.: Թարգմանվել է բազմաթիվ լեզուներով, այդ թվում՝ հայ. (1959):

«ՀԱՋԱՐԱՆ ԲԼԲՈՒԼ», *Հազարաբիլբուլ, Պյուլպուլ*, առասպել. թռչուն, հայկ. հրաշապատում հեքիաթների հերոսներից, բնության գեղեցկության, արդարության, ներդաշնակության խորհրդանիշ: «Հ. բ.» պահվում է անմատչելի տեղում՝ ոսկե վանդակում. նրան տիրանալու համար հեքիաթի հերոսը հաղթահարում է մեծ դժվարություններ: «Հ. բ.»–ի թեմային անդրադարձել են նաև Հ. Թումանյանը և ուր.:

ՀԱՋԱՐԱՇԵՆ, **սողոմաքաշ**, ժող. տան գերանակապ, բրգաձև, երդիկավոր ծածկի կառուցվածք: Հայկ. ճարտ–յան մեջ կիրառվել է գլխատներում, աշխարհիկ և պաշտամունք. բազմապիսի կառույցներում: Հ. դրվել է սյուների (մինչև 12 *մ*) կամ ուղղակի որմերի (նաև առորմիների) վրա: Ըստ գերանների կամ չորսուների դասավորության՝ ստորաբաժանվում են զուգահեռ կամ անկյունադիր տիպերի: Հ–ի կառուցվածքը հնարավորություն է տվել կարճ գերաններով (չորսուներով) ծածկել համեմատաբար մեծ թռիչքներ:

ՀԱՋԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, արքունի գործակալություն միջնադար. Հայաստանում: Հայոց Արշակունիների ժամանակ (I–V դդ.) հիմնականում ժառանգաբար վարել են Ամատունի նախարար. տոհմի իշխանները: Հ–յան գործակալը՝ հազարապետը, գանձել է պետ. հարկերը, հսկել ճանապարհների, ջրանցքների կառուցման, անտառապատման և այլ աշխ–ներ: Արշակունյաց թագավորության անկումից (428) հետո Մեծ Հայքի Հ–յան գործակալը (հաստատել է Սասանյան արքունիքը) միաժամանակ եղել է Հայոց իշխանաց իշխան, որին Ս. Տարոնեցին (Ասողիկ) անվանում է նաև մարզպան:

ՀԱՋԱՐԱՏԵՐԵՎՈՒԿ (Achillea), **բյուրատերևուկ**, աստղածաղկազգիների ընտանիքի բազմամյա կոճղարմատավոր խոտաբույսերի ցեղ: Հայտնի է ավելի քան 100 տեսակ՝ առավելապես Հս. կիսաժնդեղ բարեխառն գոտիներում: ՀՀ–ում հանդիպում է 8 տեսակ (սովոր., ասպիրակի, նեղատերև, Վիլհելմի ևն)՝ գրեթե բոլոր մարզերում: Տեսակների մեծ մասը դեղաբույս է. թուրմը և մզվածքը արյունահոսությունը դադարեցնող միջոցներ են: Մեղրատու է, գեղազարդիչ:

ՀԱՋԵՆԿԼԵՎԵՐ (Hasenclever) Վալտեր (1890–1940), գերմանացի բանաստեղծ, դրամատուրգ: 1933–ից՝ վտարանդի: Հեղինակ է խռովարար. թեմաներով «Քաղաքական բանաստեղծ» (1919) և այլ բանաստեղծությունների ժող–ների, հակապատերազմ. թեմայով «Որդի» (1914), «Անտիգոնե» (1917) և այլ պիեսների, «Գործարարներ են՝ ինչպես հարկն է» (1928), «Ամուսնությունները կնքվում են երկնքում» (1929) կատակերգությունների:

ՀԱՋԶՈ, *Հզու, Խզու*, գք Արմ. Հայաստանում, Բիթլիսի նհգ–ի Մուշ գվո–ի Սասուն գվոկ–ի կենտրոնը: 1878–ին՝ 2400, 1914–ին՝ 3000 հայ բն.: Զբաղվել են արհեստներով, առևտրով, երկրագործությամբ ևն: Հ–ի հայ բնակչության մեծ մասը բնաջնջվել է 1915–ին՝ Մեծ եղեռնի ժամանակ: Հ. վերանվանվել է Քոզլուք:

ՀԱՋԻԲԻ, **Համբարձում Աթոյան** (1840–1876), գուսան: Հորինել է հիմնականում բարոյախրատ. ու կրոն. բովանդակությամբ երգեր: Օգտագործել է աշուղ. երգարվ–ի բարդ ձևեր (դիվանի, թեջնիս, մուխամմազ ևն): Նրա մուհամմը և հանելուկներից մի քանիսը տպագրվել են «Սոխակ Հայաստանի» (1878) երգարանում:

ՀԱՋԿԵՐՏ I Բազաիքար (ծ. թ. անհտ–421), Պարսից արքա՝ 399–ից՝ *Սասանյանների* հարստությունից: Քրիստոնյաների նկատմամբ վարել է հանդուրժող. քաղյուն: Փորձել է Հայաստանում ուժեղացնել իրան. ազդեցությունը: Հայոց թագավոր *Խոսրով* Գ–ի մահից (415) հետո Հայաստանի գահը հանձնել է իր որդի *Շապուհին* (415–419):

ՀԱՋԿԵՐՏ II (ծ. թ. անհտ–457), Պարսից արքա՝ 439–ից՝ *Սասանյանների* հարստությունից: Վարել է Հայաստանի տնտ. կեղեքման, նախարարների ուժերը ջլատելու և բոնի կրոնափոխության քաղ–յուն, որը պատճառ է դարձել հայերի՝ 450–451–ի ապստամբության:

ՀԱՋՎԱԳՅՈՒՏ ՀՈՂԱՅԻՆ ՏԱՐԲԵՐ, *հազվագյուտ հողային մետաղներ*, պարբեր. համակարգի III խմբի 2–րդ. ենթախմբի քիմ. տարրեր՝ *լանթանիդներ*:

ՀԱՋՎԱԳՅՈՒՏ ՄԵՏԱՂՆԵՐ, մետաղներ, որոնք համեմատաբար նոր են կիրառվում արդ–յան մեջ: Երկրակեղևում պարունակությունը 0,53 % է՝ ըստ զանգվածի (0,41 %–ը բաժին է ընկնում Ti–ին): Հ. մ. են պարբեր. համակարգի I (Li, Rb, Cs, Fr), II (Be, Ra), III (Ga, In, Tl, Sc, Y, La, Ac, ակտինիդները և լանթանիդները), IV (Ti, Zr, Hf), V (V, Nb, Ta), VI (Mo, W, Po), VII (Re, Tc) խմբերի տարրերը: Այս մետաղների կիրառության մեծացման հետ «Հ. մ.» տերմինը դառնում է պայման.:

ՀԱՋՐԵՎԱՐԴ (Rosmarinus), **խնկունի, լուսնատակի ծառ**, խուլեղինջազգիների ընտանիքի մշտադալար կիսաթփերի ցեղ: Հայտնի է 1–3 տեսակ՝ Միջերկրածովայքում: Դեղատու Հ. մշակում են որպես եթերայուղատու և գեղազարդիչ բույս, այդ թվում՝ Կովկասում:

ՀԱԹԵՐՔ, գվո Արցախ նհգ–ում: Տարածվել է Տրտու (Թարթառ) գետի հովտում (ընդգրկել է ձախափնյակը՝ Եղիշ Առաքյալի կամ Ձրվշտիկ վանքի մերձակայքից մինչև Դադիվանքի արմ. կողմի ձորը): Կոչվել է իշխանանիստ Հաթերք բերդավանի անունով: XII–XIII դդ–ում եղել է Կենտր. Խաչենի իշխանության տիրույթը:

ՀԱԹԵՐՔ, *Հայթերք*, բերդավան *Հաթերք* գվո–ում՝ Տրտու (Թարթառ) գետի ձախ ափին: XII–XIII դդ–ում Հաթերքի իշխանության կենտրոնն էր: Ավերվել է XV–XVI դդ–ում ակ–կոյունլու և կարա–կոյունլու թուրք. ցեղերի ասպատակությունների հետևանքով: XVI դ–ի վերջին Հ–ի բնակիչները բերդավանի ավերակներից ոչ հեռու հիմնադրել են նույնանուն գյուղը (այժմ՝ Լ.Ղ.Հ Մարտակերտի շրջանում):

ՀԱԹԹԸ ՀՈՒՄԱՅՈՒՆ (hatt-i hümayun – կայսեր. գիր), 1856-ի փետր. 18-ին սուլթան *Աբդուլ Մեջիդի* ստորագրած հրովարտակն Օսմ. կայսրության ոչ մահմեդ. ժողդ-ների վիճակը բարելավելու վերաբերյալ: Հրապարակվել է 1853–56-ի Ղրիմի պատերազմից հետո՝ Անգլիայի և Ֆրանսիայի ճնշմամբ: *Հաթթը շերիֆի* ավելի ընդարձակ և մանրամասն տարբերակն էր: Առանձին սահմանափակումներով իրականացվել են միայն կրոն. համայնքներին վերաբերող կանոնադրությունները (տես *Ազգային սահմանադրություն 1860*):

ՀԱԹԹԸ ՇԵՐԻՖ (hatt-i serif – սրբազան գիր), **Գյուլհանեի հաթթը շերիֆ** (Gülhane hatt-i serif), 1839-ի նոյեմբ. 3-ին Կ. Պոլսի սուլթան. պալատի Գյուլհանե կոչված պարտեզում հրապարակված կայսեր. հրովարտակը (սկզբնավորել է *Թանզիմաթի* ժամանակաշրջանը): Հրապարակվել է քաղ., տնտ. և ֆին. ճգնաժամից դուրս գալու, Օսմ. կայսրության ժողդ-ների ազգ-ազատագր. պայքարը կանխելու նպատակով: Հեղինակը Մուստաֆա Ռեշիդ փաշան էր: Հ. շ-ով նախատեսվում էր բոլոր հպատակների կյանքի, գույքի ապահովություն, հարկերի արդարացի բաշխում, զանձում ևն, որի նպատակը, սակայն, իրականում եվրոպ. պետությունների առջև տպավորություն ստեղծելն էր և նրանց հնարավոր միջամտությունները կանխելը:

ՀԱԹԻԲ ԹԱՎՐԻԶԵՑԻ (Յախյա իբն Ալի ալ Հաթիր աթ Թեբրիի, 1030–1108), պարսիկ արաբագիր գրող, բանասեր, քերական: Կազմել է IX–XI դդ-ի արաբ. պոեզիայի «Խամասա» (հրտ.՝ 1828) անթոլոգիան: Հեղինակ է Ղուրանի մեկնաբանություններին, աստվածաբանությանը, արաբ-ին, բառարանագրությանը, քերակ-յանը և պոեզիային վերաբերող աշխ-ների:

ՀԱԼԱԲԻ ԼԵՌՆԱՇՂԱԹ, Փոքր Կովկասի արտաքին շարի լ-շղթա Լոռու մարզում՝ Փամբակ և Աղստև գետերի միջև: Միջին բարձր.՝ 2600 *մ*, առլճ՝ 3016 *մ* (Բովաքար լ.): Կազմված է պալեոգենի հրաբխածնտվածք. ապարներից ու գրանոդիորիտներից: Բնորոշ են կտրտված էրոզիային ռելիեֆը, շրջված գոգածալքային, անհամաչափ կառուցվածքը: Հս. լանջերն անտառապատ են՝ կտրտված Ալարեքս, Մարց և Հաղպատ գետերի V-աձև հովիտներով, հվ. լանջերն անտառազուրկ են՝ ծածկված սելավաբեր հովտաձորակային ցանցով:

ՀԱԼԱԲՅԱՆ Կարո Սիմոնի (1897–1959), ճարտ.: Ճարտ. դ-ր (1948), ԽՍՀՄ ճարտ. ակադ-ի ակադ., փոխնախագահ (1949–1953): ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1940): Նախագծել է (Միքայել *Մազմանյանի* և Գևորգ *Քոչարի* հետ) բնակելի, վարչ., մշակութ-լուսավոր. շենքեր (Երևանում՝ Կառուցողների ակումբը, այժմ՝ Կ. Ստանիսլավսկու անվ. ռուս. թատրոնի շենքը, 1928–29, ջրէկի բնակելի «շախմատաձև» տունը, 1930–32, Երկրբ-յան վարչության շենքը, 1929–30), որոնց բնորոշ են նորաբար. միտումները: 1932-ից ապրել է Մոսկվայում: Կառուցել է Մոսկվայի Խորհրդ. բանակի թատրոնի շենքը (1934–40, Վ. Ն. *Սիմբիրցևի* հետ), Նյու Յորքի միջազգ. ցուցահանդեսի ԽՍՀՄ (1939, Բ. *Իոֆանի* հետ), ԺՏՆՅ-ի ՀԽՍՀ (Մոսկվա, 1939, 1954, Սամվել *Սահբազյանի* հետ) տաղավարները: Ղեկավարել է Վոլգոգրադ ք-ի վերականգնման նախագծման աշխ-ները (Ն. Պոլյակովի և ուր. հետ): Ճարտ-ների Բրիտ. թագավոր. ինստ-ի պատվ. թղթ. անդամ (1936): «Դրան Պրի» (Փարիզ):

ՀԱԼԱՆՅՈՒԹԵՐ, **ֆլյուս** (գերմ.՝ Fluss – հոսք), 1. մետաղագործության մեջ հիմնականում միներալ. ծագման նյութեր են, որոնք ավելացվում են բովախառնուրդին՝ *խարամի* գոյացման և դրա բաղադրության կարգավորման համար: 2. Մետաղների գազ. և դարբնոց. եռակցման դեպքում՝ հ. առաջացած օքսիդները լուծող քիմիկատներ են: 3. Ինքնաշխատ և էլեկտրախարամ. եռակցման դեպքում՝ հ. բարդ բաղադրության մանրած նյութեր են, որոնք լցվում են եռակցման գոտու մեջ: 4. Զոդման դեպքում՝ հ. քիմիապես ակտիվ նյութեր են, որոնք օգտագործվում են զոդվող մակերևույթները և զոդանյութն օքսիդներից ու կեղտերից մաքրելու, օքսիդների առաջացումը կանխելու, զոդանյութի մակերևութ. լարումը փոքրացնելու համար:

ՀԱԼԱՋՅԱՆ Մարատ Մինասի (1920–1971), ռադիոհաղորդավար (1945-ից): ՀԽՍՀ վաստ. արտիստ (1967): «Սայաթ-Նովա» (1960, գեղ. հեռուստաֆիլմ), «Շիրակի մեղեդիները» (1965, ֆիլմ-համերգ), «Պոեմ հերոսական» (1968, վավերագր., երեքն էլ՝ «Երևան» ստուդիա) ֆիլմերում կարդացել է հեղինակի խոսքը:

ՀԱԼԱՍ (Halas) Ֆրանտիշեկ (1901–1949), չեխ բանաստեղծ: Հարել է անկումային արվ-ին: Հեղինակ է «Սեպիա» (1927), «Աքաղաղը վախեցնում է մահին» (1930) ողբերգ. թեմաներով, «Անզիջում պայքար» (1936), «Հույսի բեկոր» (1938) հակաֆաշիստ. և բանաստեղծությունների այլ ժող-ների: Թարգմանել է Ա. Միցկևիչի, Ա. Ս. Պուշկինի և ուր. երկերից:

ՀԱԼԱՎԱՐԻ ՋՐԱՄԲԱՐ, **Մելիք գյուղի ջրամբար**, ՀՀ Արագածոտնի մարզում՝ Հալավար գետի վրա՝ Ծաղկահովիտ գ-ից 8 *կմ* արլ.՝ մոտ 2030 *մ* բարձր-յան վրա: Շահագործման է հանձնվել 1981-ին: Մակերեսը՝ 0,46 *կմ*^{2}, միջին խոր.՝ 8 *մ*, ջրատարողությունը՝ 5,5 մլն *մ*^{3}: Հոսքի կարգավորումը սեզոնային է: Պատվարը հողային է՝ ավազակավ. միջուկով, երկ.՝ 255 *մ*, առլճն բարձր.՝ 32 *մ*: Ոռոգվող հողատարածություններն ավելի բարձր են, և պատվարի մոտ կառուցված է ջրհան կայան: Երկրբ. անբարենպաստ պայմանների պատճառով տեղի է ունենում ջրի զգալի կորուստ:

ՀԱԼԱՖՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ, ինագիտ. մշակույթ հս. Միջագետքում: Անվանումը՝ հս. Սիրիայի Թել Հալաֆ բնակավայրից: Ակունքները հայկ. լ-աշխարհի հվ-արմ. և Անատոլիայի արլ. շրջաններում են: Ժամանակակից Իրաքի և Սիրիայի մի մասի տարածքներում տարածվել է մ. թ. ա. VI հզ-ամյակի վերջին: Վերացել է մ. թ. ա. մոտ 4400–4300-ին՝ հվ-ից շումերների նախնիների ներխուժման հետևանքով: Փոխարինվել է հս. Ուբեյդյան մշակույթով:

ՀԱԼԲՎԱՔՍ, Ալբվաքս (Halbwachs), Մորիս (1877–1945), ֆրանսիացի սոցիոլոգ: Աշակել է կոլեկտիվ հիշողության հայեցակարգ («Հիշողության սոցիալական շրջանակները», 1925)՝ հետևելով Է. *Դյուրհեյմի* գաղափարներին և Ա. *Բերգսոնի* փիլ-յան դրույթներին:

ՀԱԼԳՐԻՄՍՈՆ (Hallgrimsson) Գեյր (1925–1990), Իսլանդիայի վարչապետ՝ 1974–78-ին, ԱԳ նախարար՝ մինչև 1983-ը: 1973–83-ին՝ «Անկախություն» կուս-յան նախագահ:

ՀԱԼԴԵՐ (Halder) Ֆրանց (1884–1972), գերմանացի գեն-գնդ. (1940): 1938–42-ին՝ Գերմանիայի ցամաք. ՋՈՒ-ի ԳՇ պետ, ռազմ. պլանների մշակման ղեկ.: Պաշտոնազրկվել է Արլ. ռազմաճակատում անհաջողությունների և Հիտլերի հետ տարակարծությունների պատճառով:

ՀԱԼԵԲՅԱՆ Ղուկաս Պետրոսի (1949–2014), քիմիկոս-կենսատեխնոլոգ: Քիմ. գիտ. դ-ր (2000): Աշխ-ները վերաբերում են կենսակատալիտիկ շարժընթացների օգտագործմամբ սպիտակուցային ամինաթթուների սինթեզին և դրանց ստացման կենսատեխնոլոգ. արտադր-յունների մշակմանը, ինչպես նաև ֆիզիոլոգիապես ակտիվ միացությունների ակտիվության և քիմ. կառուցվածքի կապին:

ՀԱԼԵՊ [Ալեպո, Հալաբ (անտիկ շրջանում՝ Բերոյա, հայկ. աղբյուրներում՝ Բերիա, Տիբերիա, Խաղաբ)], ք. Սիրիայի Արաբ. Հանրապետության հս-արմ-ում, համանուն մուհավազի վարչ. կենտրոնը: Բն.՝ 2,4 մլն (2008): Հայտնի է ավանդ. արհեստներով, տեքստիլ, կաշվի, քիմ. սննդի արդ-յան կենտրոն է: Ունի համալսարան, թանգարան, միջնաբերդ (հիմն.՝ XII դ-ի վերջ–XIII դ-ի սկիզբ), պահպանվել են քաղաքի պարսպի և դարպասների մնացորդներ (XIV–XVI դդ.), Մեծ մզկիթը (VIII, XII և XIII դդ.), խանի շուկաները (XV–XVII դդ.): Հին քաղաքը ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխ. ժառանգության ցանկում:

Զգալիորեն տուժել է 2012—17-ի՝ ընդդիմադիրների ու գրոհայինների և կառավար. զորքերի միջև քաղաքաց. պատերազմի ընթացքում: Բնակչության թիվը նվազել է շուրջ 1 մլն-ով, ավերվել են մի շարք միջնադար. շինություններ ու ճարտ. հուշարձաններ (այդ թվում՝ *Պալմիրան*):

Հ-ի հայկ. գաղութի վերաբերյալ առաջին հիշատակությունը 1329-ի ձեռագիր հիշատակարանում է: Մեծ եղեռնից և ԱՀՊ-ից հետո Հ-ում ապաստանել են շուրջ 60 հզ. հայ գաղթականներ Արմ. Հայաստանից ու Կիլիկիայից: 1999-ին հալեպահայերի թիվը 70 հզ. էր: Հ-ում են Հս. Սիրիայի հայության ազգ. առաջնորդարանը, ազգ. կուս-յունների Սիրիայի ղեկ. մարմինները, ՀԲԸՄ, Թեքեյան, Համազգ., Ազգ., Կիլիկյան մշակութ. միությունները, Մ. Սարյան ակադ-ը ևն: Վերջին պատերազմի ժամանակ Հ-ից գաղթել է հայերի մեծ մասը: Ներկայում հայերի թիվը 8–10 հզ. է:

ՀԱԼԵՊԻ ՍՈՒՐԲ ՔԱՌԱՄԱՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻ, XIV դ-ի ճարտ. հուշարձան: Հիշատակվում է 1429-ից: Խորանը կառուցվել է 1499-ին, ներկայի եկեղեցին՝ 1616-ին, որը բաղկացած է 2 եռանավ կից բազիլիկներից, բազմանիստ խորանի 2 կողմերում՝ ավանդատներ, վերնահարկ պատշգամբ՝ երգչախմբի համար: Ունի օժանդակ սենյակներ, ժամացույցի զանգաշտարակ, որի շուրջ առաջնորդարանի շենքերն են, դահլիճը, բակում՝ Մեծ եղեռնին նվիրված հուշարձանը (բոլորը՝ XX դ.): Եկեղեցին 2015-ին պայթեցվել է, որի հետևանքով զանգակատան մի հատվածը փլուզվել է:

ՀԱԼԵՎԻ (Halevi) ալ-Հասան Յահուդա (մոտ 1075–1141), հրեա բանաստեղծ, փիլ., բարբի: Ապրել է Կորդովայում (Իսպանիա): Հեղինակ է բարեկամության, սիրո, ընկերության թեմաներով բանաստեղծությունների, հոգևոր արժեքներին նվիրված պոեմների, եղերերգերի, հանելուկների: Նրա գլխ. աշխ-ը «Խազարի

գիրքը» փիլ. երկն է (արաբ.): Չափածո գործերը գրել է երբ.:

ՀԱԼԵՎԻ, **Ալևի**, Ֆրոմանտալ (Էլիաս Լևի, 1799–1862), ֆրանսիացի կոմպոզիտոր, երաժշտ. քննադատ: Մեծ օպերայի [«Հրեուհին» («Կարդինալի դուստրը»), 1835, «Կառլոս VI», 1843, «Պիկովայա դամա», 1850, ևն] ներկայացուցիչ: Հեղինակ է բալետների («Մանոն Լեսկո», 1830, ևն), կանտատների, խմբերգերի, ռոմանսների ևն: Հռոմ. մրց. (1819):

ՀԱԼԵՎՈՐՈՒԿ (Senecio), **ալևորուկ, խաչախոտ**, աստղածաղկազգիների ընտանիքի խոտաբույսերի, լիանների (երբեմն՝ երկար փայտ. ցողունով), թփերի, թփուտների, ցածր ծառերի ցեղ: Հայտնի է ավելի քան 1500 (այդ տվյալներով՝ 3000) տեսակ, ՀՀ-ում՝ 15 (գարնան., խատուտիկատերև, կովկաս., ճարճրուկատերև ևն): Լիպսկու, Սոռնովսկու ու սառցադաշտ. դարաշրջանի մնացուկ գետային Հ-ները (պահպանվել են միայն Սևանի ավազանի բարձրլեռն. ճահճուտներում) բնաշխարհիկներ են: Տափակատերև Հ. դեղաբույս է. պարունակում է ալկալոիդներ: Մեղրատու է, ներկատու:

ՀԱԼԻԿԱՌՆԱՍԻ ԴԱՄԲԱՐԱՆ, *աշխարհի յոթ հրաշալիքներից*, Սավտոլես թագավորի դամբարանը: Կառուցվել է մ. թ. ա. 353-ին Հալիկառնասում (այժմ՝ Թուրքիայի Բոդրում ք-ի շրջակայքում, ճարտ-ներ՝ Պյութեաս, Սատիրոս): Ավերվել է XV–XVI դդ-ում: Քանդակների մնացորդները Լոնդոնի Բրիտ. թանգարանում են:

ՀԱԼԻՃՈՐԻ ԿՈՒՍԱՆԱՅ ԱՆԱՊԱՏ, **Հալիձորի բերդ**, ճարտ. համալիր ՀՀ Սյունիքի մարզում՝ Ողջի գետի ափին: Կառուցվել է XVII դ-ի 1-ին կեսին՝ որպես անապատ, XVIII դ-ում վերակառուցվել է բերդի: Համալիրում գերիշխողը թաղածածկ դահլիճ հորինվածքով եկեղեցին է, որին հվ-ից և հս-ից կից են թաղածածկ երկհարկ շինություններ: Շրջափակված է անկանոն քառանկյուն պարսպապատով:

ՀԱԼԻՃՈՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1727, զինված բախում Սյունիքի հայ ազատագր. շարժման ուժերի և օսմ. բանակի ու նրան միացած մի քանի ֆեոդալների միացյալ զորքերի միջև: Տեղի է ունեցել մարտին Հալիձորի բերդի մոտ: Ավարտվել է հայերի հաղթանակով, որը մեծապես նպաստել է Սյունիքի և Արցախի ազատագր. շարժման համախմբմանը:

ՀԱԼԻՖԱՔՍ (Halifax) Էդուարդ Ֆրեդերիկ Վուդ (1881–1959), Բրիտանիայի պահպանող. կուս-յան առաջնորդներից: 1926–31-ին՝ Հնդկաստանի փոխարքա: 1938–40-ին՝ ԱԳ նախարար, ֆաշիստ. նվաճողների հետ հաշտեցման քաղ-յան կողմնակից:

ՀԱԼԻՖԱՔՍ, ք. Կանադայում, նվինգստ Ատլանտ. օվկ-ի ափին: Նոր Շոտլանդիա պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 287,3 հզ. (2010): Ունի բուհեր: Կան նավա- և մեքենաշինության, նավթավերամշակման, ձկնաբուծության և այլ ձեռն-ներ:

ՀԱԼԼ (Hull) Քլարկ Լեոնարդ (1884–1952), ամերիկացի հոգեբան: Հետևելով Է. *Թոլմենին*՝ բիհեյվիորիզմի «ազդակ-հակազդեցություն» հիմն. սխեմայում ներմուծել է «միջանկյալ փոփոխականների» միջանկյալ օղակ: Հոգեբ. հետազոտությունները առաջինն է մաթ. տրամաբ-յունը կիրառել (վարքի հիպոթետիկ-դեդուկտիվ տեսություն):

ՀԱԼԼԵ, ք. Գերմանիայի Սաքսոնիա-Անհալտ երկրում՝ Զաալե գետի ափին: Բն.՝ 233 հզ. (2010): Ունի համալսարան (հիմն.՝ 1648), Բնական գիտ-յունների ակադ., գործում է Գեորգ Հենդելի տուն-թանգարանը: Պահպանվել են Մորիցբուրգ ամրոցը (1484–1503) և եկեղեցիներ (XIV–XVI դդ.):

ՀԱԼԼԵՅ, **Հալլի** (Halley), Էդմունդ (1656–1742), անգլիացի աստղագետ և երկրաֆիզիկոս: Լոնդոնի թագավոր. ընկ-յան անդամ (1678), Օքսֆորդի համալսարանի պրոֆ. (1703): 1720-ից՝ Գրինվիչի աստղագիտական աստղադիտարանի տնօրենն: Կազմել է Հվ. երկնքի 341 աստղի հեռադիտակ. առաջին աստղացուցակը, հայտնաբերել է աստղերի սեփ. շարժումները (1718): Հաշվարկել է ավելի քան 20 գիսավորների ուղեծրերը: Կանխագուշակել է գիսավորներից մեկի (*Հալլեյի գիսավոր*) նոր հայտնվելու (1758) ժամանակը, 1682-ին ապացուցել է պարբեր. գիսավորների գոյությունը:

ՀԱԼԼԵՅԻ ԳԻՍԱՎՈՐ, անվանվել է Է. *Հալլեյի* անունով, որը կանխագուշակել է այդ գիսավորի վերադարձը 1758-ին և դրանով իսկ ապացուցել, որ այն *Արեգակնային համակարգի* անդամ է: Հ. գ-ի պտտման պարբերությունը մոտ 76 տարի է:

ՀԱԼԼԵՐ (Haller) Ալբրեխտ ֆոն (1708–1777), շվեյցարացի անատոմ, ֆիզիոլոգ, բնախույզ, բանաստեղծ, փորձարար. ֆիզիոլոգիայի հիմնադիրներից: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1776): Հեղինակ է «Ֆիզիոլոգիայի տարրերը...» (հ. 1–8, 1755–66) դասագրքի, նաև փիլ. պոեմների ու բանաստեղծությունների:

ՀԱԼԼԻ (Hally, մինչև 1977-ը՝ Հալլի Բեյն), բրիտ. գիտ. կենտրոն (1956-ից) Անտարկտիդայում՝ շելֆային սառցադաշտում, հարում է Կոտսա Երկրին:

ՀԱԼՈԳԵՆԻԴՆԵՐ, *հալոգենների* միացություններն առավել էլեկտրադրական քիմ. տարրերի հետ, օր.՝ օքսիդներ, սուլֆիդներ, սելենիդներ, տելուրիդներ:

ՀԱԼԿՈԳԵՆՆԵՐ, տարրերի պարբեր. համակարգի VI խմբի քիմ. տարրերը՝ թթվածին, ծծումբ, սելեն, տելուր:

ՀԱԼՄԱՀԵՐԱ, **Զայլոլո** (Halmahera, Djailolo), Մոլուքյան կղզիներից ամենամեծն Ինդոնեզիայում: Տարածքը՝ 18 հզ. *կմ²*, բարձր.՝ 1615 *մ*: Կան մշտադալար անտառներ, զարգացած է արևադարձ. երկրաբազործությունը: Նվինգստ-ը՝ Զայլոլո:

ՀԱԼՄԱՆ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ, մարմնի պինդ բյուրեղ. վիճակից հեղուկի անցնելու ջերմաստիճանը: Մթն. ճնշման դեպքում (1013,25 *կՊա* կամ 760 *մմ* սնդ.) Հ. ջ. անվանում են **հալման կետ**:

ՀԱԼՇՏԱՅՆԻ ԴՈԿՏՐԻՆ (գերմ.՝ Hallstein-Doktrin), ԳԴՀ արտաքին քաղ. դոկտրին՝ միջազգ. ասպարեզում ԳԴԵՀ-ի մեկուսացման նպատակով: Ընդունվել է 1955-ի դեկտ. 8–9-ին Բոննում՝ Արմ. Գերմանիայի դեսպանների խորհրդակցության ժամանակ՝ ԱԳ նախարար-պետքարտուղար Վալտեր Հալշտայնի առաջարկությամբ:

ՀԱԼՇՏԱՏՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ, վաղ երկաթի դարի (մ. թ. ա. մոտ 900–400) մշակույթ Միջին և Հվ. Եվրոպայում: Անվանումն ստացել է Ավստրիայի Հալշտատ (Hallstatt) ք-ի անունից, որի հարևանությամբ հայտնաբերվել են բնակավայրի մնացորդներ, դամբարաններ, հանքավայրեր: Հ. մ-ի հիմն. կրողները եղել են իլլիրիացիները և կելտերը: Զբաղվել են երկրագործությամբ, անասնապահությամբ և մետաղագործությամբ: Բացահայտել (1846) և ուսումնասիրել է ավստրիացի լեռնագործ Յոհան Գեորգ Ռամզաուերը:

ՀԱԼՈ (հուն.՝ halos – շրջան, սկավառակ), լուսավոր շրջաններ, աղեղներ, սյուներ, բծեր Արեգակի և Լուսնի սկավառակների շուրջ: Առաջանում են օդում կախված սառցե բյուրեղներից լույսի բեկման կամ անդրադարձման հետևանքով:

ՀԱԼՈԳԵՆԱԾԱՆՑՅԱԼՆԵՐ ԱԾԽԱՔԱԾԻՆՆԵՐԻ, *հալոգեններ* պարունակող ածխաջրածիններ, որոնց մոլ-ներում ջրածնի մեկ կամ մի քանի ատոմները տեղակալված են հալոգենի ատոմներով: Ըստ հալոգենի ատոմին միացած ռադիկալի բնույթի՝ տարբերում են առաջնային, երկրորդային և երրորդային, իսկ ըստ հալոգենի ատոմների թվի՝ միա-, երկ-, եռ- և բազմա- Հ. ա.: Օգտագործում են որպես լուծիչներ, ֆրեոններ և հումք՝ արդ. օրգ. սինթեզում:

ՀԱԼՈԳԵՆԱՅԻՆ ԼԱՄՊ, շիկացման լամպ, որի գազ. խառնուրդի բաղադրության մեջ, բացի իներտ գազից (օր.՝ քսենոնից), պարունակվում են *հալոգեններ* (սովորաբար՝ յոդ): Սովոր. շիկացման լամպի համեմատությամբ զգալիորեն բարձր է լուսատացքը (20 *լմ/Վտ*-ից բարձր), և երկար՝ օգտագործման ժամկետը:

ՀԱԼՈԳԵՆԱՀԻԴՐԻԴՆԵՐ թթուների, թթուների ածանցյալներ, որոնց մեջ հիդրօքսիլ խմբերը տեղակալված են *հալոգենների* ատոմներով, օր.՝ սուլֆուրիլ քլորիդ՝ SO_2Cl_2 (ծծմբական թթվի հալոգենանհիդրիդ), ացետիլքլորիդ՝ CH_3COCl (քացախաթթվի հալոգենանհիդրիդ): Թթուների Հ. (սովորաբար՝ քլորանհիդրիդները) կիրառվում են որևէ միացության մոլ-ում ացիլ խումբ (RCO) ներմուծելու համար (տես *Ացիլում*):

ՀԱԼՈԳԵՆԱՋՐԱԾԻՆՆԵՐ, *հալոգենների* քիմ. միացությունները ջրածնի հետ (ֆտորաջրածին, քլորաջրածին, բրոմաջրածին, յոդաջրածին):

ՀԱԼՈԳԵՆԻԴՆԵՐ, *հալոգենների* քիմ. միացություններն այլ տարրերի հետ, օր.՝ ֆտորիդներ, քլորիդներ, բրոմիդներ, յոդիդներ:

ՀԱԼՈԳԵՆՆԵՐ (< հուն. hals – աղ և ...*գեն*), **աղածիններ**, տարրերի պարբեր. համակարգի VII խմբի գլխ. ենթախմբի քիմ. տարրեր՝ ֆտոր՝ F, քլոր՝ Cl, բրոմ՝ Br, յոդ՝ I, և աստատին՝ At: Հ-ի մոլ-ները երկատոմանի են:

ՀԱԼՈՆԵՆ (Halonen) Տարյա Կաարինա (ծ. 1943), Ֆինլանդիայի նախագահ՝ 2000–12-ին: 1987–90-ին՝ սոցիալ. ապահովության և առողջապ-յան, 1990–91-ին՝ արդարադատության, 1995–2000-ին՝ ԱԳ նախարար:

ՀԱԼՈՖԻԼՆԵՐ (< հուն. hals – աղ և ...*ֆիլ*), **աղասերներ**, բարձր աղիության պայմաններում (ծովերում, աղի լճերում, աղակալած հողերում) ապրող օրգանիզմներ:

ՀԱԼՍ (Halse) Ռասել Ալան (ծ. 1950), ամերիկացի աստղաֆիզիկոս: 1974-ին Ջ. *Թեյլորի* հետ հայտնաբերել է 1-ին ռադիոբաբախիչը՝ կրկնակի համակարգում, որն ընդլայնել է ձգողականությունն ուսումնասիրելու հնարավորությունները:

Նոբելյան մրց. (1993, Ջ. Թեյլորի հետ):

ՀԱԼՍ (Hals) Ֆրանս (1581-ի և 1585-ի միջև–1666), հոլանդացի գեղանկարիչ: Դիմանկարները (նաև խմբանկարները) առանձնանում են կենսականությամբ, շարժունությամբ, կատարման ազատ և վիրտուոզ ձևերով («Գնչուհին», մոտ 1628, «Սև հագուստով տղամարդը», մոտ 1650–52, ևն): Վերջին շրջանի գործերում

հաճախ նկատելի են հոռետես. տրամադրությունները, սև ու սպիտակ գույների լարված հակադրությունը («Ծերանոցի խնամակալուհիները», 1664, ևն):

ՀԱԼՎԱ (արաբ.), հրուշակեղենի տեսակ: Պատրաստում են յուղատու սերմերից (քնջութ, արախիս, արևածաղիկ, սոյա ևն) կամ դրանց խառնուրդից և կարամել. զանգվածից՝ խառնելով փրփրագոյացնող նյութերի (օճառարմատ, մատուտակ) թուրմի հետ: Հայաստանում Հ. պատրաստում են նաև յուղի մեջ բոված ալյուրից՝ վրան լցնելով շաքարաջուր կամ մեղրաջուր:

ՀԱԼՎԵ (Aloe), **ալոե**, թաղաղուազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի, թփերի, հազվադեպ՝ ծառերի ու լիանների ցեղ: Հայտնի է ավելի քան 350 տեսակ՝ հատկապես Աֆրիկայի չորային մարզերում: ՀՀ-ում աճեցվում է Երևանի բուսաբ. այգում, Արմավիրի մարզում, սենյակային պայմաններում՝ ծառանման Հ.: Հ-ի տարբեր տեսակների տերևներից ստացված դեղապատրաստուկները հիմնականում կենսաձին խթանիչներ են: Որոշ տեսակներ աճեցնում են որպես գեղազարդիչ:

ՀԱԼՎՈՐՍԵՆ (Halvorsen) Յուհան (1864–1935), նորվեգացի դիրիժոր, կոմպոզիտոր, ջութակահար: Նորվեգ. ազգ. սիմֆոնիզմի (3 սիմֆոնիա, 1923–29) և թատեր. երաժշտության հիմնադիրներից: 1899–1929-ին՝ Քրիստիանիայի (Օսլո) ազգ. նվագախմբի գլխ. դիրիժոր: Հեղինակ է յուհտների, «Նորվեգական ռապսոդիաներ»-ի (1921, 1922), օպերետի, կանտատի, կամեր-գործիք. անսամբլների, խմբերգերի, երգերի, թատեր. երաժշտության ևն:

ՀԱԼՈՒՄ, պինդ բյուրեղ. նյութի անցումը հեղուկ վիճակի (1-ին կարգի ֆազային անցում): Հաստատուն արտաքին ճնշման դեպքում մաքուր նյութի Հ. տեղի է ունենում հաստատուն ջերմաստիճանում ($t_{հալ.}$), որը կոչվում է ***հալման ջերմաստիճան***: Ամորֆ պինդ մարմինները հալման կետ չունեն, հեղուկ վիճակի անցնում են աստիճանաբար:

ՀԱԼՈՒՖԻՆԱՅԻՆ, տես *Զգայախաբություն*:

ՀԱԽԱ (Hacha) Էմիլ (1872–1945), Չեխոսլովակիայում գերմանացի ֆաշիստների ստեղծած «Բոհեմիայի և Մորավիայի պրոտեկտորատի» նախագահ՝ 1939–45-ին: 1945-ի մայիսին ձերբակալվել է որպես ռազմ. հանցագործ: Մահացել է կալանավայրում:

ՀԱԽԻՆՅԱՆ Գրիգոր Մուշեղի (1926–1991), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1972), ժող. արտիստ (1990): ԵՊԿ պրոֆ. (1989): Հեղինակ է «Լեգենդի մարդը» (1970), «Ծովինար» (1973) օպերաների, «Ախթամար» (1961), «Ուռենի» (1963) բալետների, «Սայաթ-Նովա» (1963), «Մեծ հաղթանակ» (1985) կանտատների, օրատորիայի, սիմֆոնիաների, կոնցերտների, վոկալ-գործիք. երկերի, թատրոնի և կինոյի երաժշտության, ժող. և աշուղ. երգերի մշակումների:

ՀԱԽԻՆՋԱ, գետ ՀՀ Տավուշի մարզում և Ադրբեջանում, Տավուշի աջ վտակը: Սկիզբ է առնում Միափորի լ-շղթայի հսարլ. լանջերից՝ մոտ 2000 *մ* բարձր-ից: Երկ.՝ 44 *կմ*, ավազանը՝ 326 *կմ*^{2} (ՀՀ տարածքում, համապատասխանաբար՝ 17 *կմ* և 132 *կմ*^{2}), ջրի միջին ծախսը՝ 2,92 *մ*^{3}/*վ*: Մնումը հիմնականում ձնաանձրևային է, վարարումը՝ ապրիլ–մայիսին: Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով:

ՀԱԽՃԱՊԱԿԻ, թափանցիկ ջնարակով պատած, հոծ, մանրածակոտկեն թրծազանգվածով (սովորաբար՝ սպիտակ) նուրբ խեցեղեն: Կիրառվում է շին-յան մեջ և սանտեխնիկայում (երեսպատման սալիկներ, ճարտ. դետալներ, լվացարաններ, զուգարանակոնքեր): Հ-ու զանգվածից պատրաստում են գեղազարդիչ իրեր, ճաշի և թեյի սպասք:

Գեղ. Հ. հայտնի էր դեռևս Հին Եգիպտոսում, IV–V դդ-ում արտադրվել են Չինաստանում, ավելի ուշ՝ Կորեայում, Ճապոնիայում, Իրանում, Եվրոպայում, Ռուսաստանում, Ուկրաինայում և այլուր: Հայաստանում Հ-ու արտադր-յան կենտրոններ են եղել Դվինը, Անին, Գառնին և հատկապես՝ Կուտինան: 1947–90-ական թթ-ին Երևանում գործել է հախճապակե իրերի գործարան: Տես նաև ***Խեցեգործություն***:

ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ Արմեն Հովհաննեսի (1941–2009), ճարտ.: Ճարտ-յան դ-ր (1973): 1972-ին Ահենում (Գերմանիա) հիմնադրել է Հայ ճարտ-յան արխիվ և հայկ. ճարտ-յուն ուսումնասիրող կենտրոն (1998-ից՝ Երևանում): Հ-ի նախաձեռնությամբ 1980-ական թթ-ից Իրանում վերականգնվել են Սբ Թադեի և Սբ Ստեփանոս Նախավկա վանքերը: Համահեղինակ է «Հայ ճարտարապետության վավերագրերի»՝ «Ս. Թադեի վանք» (Միլան, 1971) և «Նոր Ջուլֆա» (Վնտ., 1992) պրակների, հեղինակ՝ «Արտազի երեք վանքերը» (2012) աշխ-յան: Մասնակցել է ճարտ. մանրաժապավենների հրտ-յանը (հ. 1–7, 1984–89, Նյու Յորք):

ՀՀ ԱԺ Պատվո (2008), ՀԱԳ «Հակոբ Մեղապարտ» (2009) մեդալներ:

ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ Կարապետ Վարդանի (1894–1980), խորհրդ. բանակի հրետանու գեն-մայոր (1944): Մասնակցել է ԱՀՊ-ին (1917-ից), Հայաստանում՝ 1921-ի քաղաքաց. կռիվներին: ՀՄՊ-ի ժամանակ եղել է Բրյանսկի ռազմաճակատի 8-րդ հրաձգ. դիվիզիայի հրետանու հրամ. (1941–43), 1-ին մերձբալթ. ռազմաճակատի 43-րդ բանակի հրետանու հրամ-ի տեղակալ (1943), ապա՝ նույն բանակի 1-ին հրաձգ. կորպուսի հրետանու հրամ. (1944-ի հունիս–1945-ի մայիս): Զորացրվել է 1953-ին:

ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ Համայակ Նիկողոսի (Նիկոլայի, 1898–1987), ճարտարագիտ. զորքերի գեն-մայոր (1944): 1918-ին կռվել է հայ-թուրք. ռազմաճակատում (Իգդիր, Սարդարապատ): 1939–47-ին՝ ԽՍՀՄ ԶՈՒ գլխ. կոնստրուկտորի տեղակալ, 1944-ից՝ գլխ. կոնստրուկտոր: Մինչև 1954-ն աշխատել է ռազմ. տեխնիկայի արտադրյան բնագավառում:

ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ Նարեկ Սուրենի (ծ. 1988), թավջութակահար: ՀՀ վաստ. արտիստ (2017): Սուրեն *Հախնազարյանի* որդին: Հանդես է եկել Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնի, Ձիկագոյի, Տոկիոյի, Լոնդոնի, Փասադենայի, Միլանի Ջ. Վերդիի անվ. սիմֆ. և այլ նվագախմբերի հետ՝ նշանավոր դիրիժորների ղեկավարությամբ:

Ա. Խաչատրյանի անվ. միջազգ. մրցույթի 1-ին մրց. և ոսկե մեդալ (2006), ՀՀ նախագահի Երիտասարդ. (2007), Նյու Յորքի «Young Concert Artists» մրցույթի (9 հատուկ, 2008) մրց-ներ, Պ. Ի. Չայկովսկու անվ. XIV միջազգ. մրցույթի ոսկե (2011, Մոսկվա), ՀՀ «Մովսես Խորենացի» (2013) մեդալներ:

ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ Սուրեն Հայրապետի (ծ. 1949), ջութակահար: Երևանի (2003) և Մոսկվայի (2008) կոնսերվատորիաների պրոֆ.: «Հախնազարյան» եռյակի հիմնադիրը (1995): Նարեկ *Հախնազարյանի* հայրը: 1956-ից՝ ՀԽՍՀ հեռուստառադիոպետկոմի ջութակահարների անսամբլի, 1984–2008-ին՝ Կոմիտասի անվ. քառյակի (2-րդ ջութակահար) մենակատար:

Այսրկովկաս. մրցույթի 1-ին (1969), ՀԽՍՀ Պետ. (1985) մրց-ներ, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2007):

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ Դավիթ Ներսիկի (ծ. 1973), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (2013), պրոֆ. (2016): Աշխ-ները վերաբերում են միջազգ. տնտ. հարաբերությունների, ՀՀ ինստիտուցիոնալ բարեփոխումների, կորպորատիվ կառավարման խնդիրներին:

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ Լեոն Արտավազդի (ծ. 1944), երկրաբան: Երկրբ. գիտ. դ-ր (2005): Աշխ-ները վերաբերում են երկրաշարժերի կանխագուշակման մեթոդներին:

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ Լևոն Հովհաննեսի (1924–2003), գրականագետ, թատերագետ, թարգմանիչ: Բանասիր. գիտ. դ-ր (1967), պրոֆ. (1987): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1990-ից): ՀՀ արվ. վաստ. գործիչ (1972): Հովիկ *Հախվերդյանի* եղբայրը, Ռուբեն *Հախվերդյանի* հայրը: 1987–2003-ին՝ ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի տնօրենն: Հեղինակ է «Դերեր և դերասաններ» (1977), «Զրույցներ լեզվի մասին» (1993), «Թումանյանը և հայոց պատմական ճակատագիրը» (2000) և այլ աշխ-ների: Կազմել է «Թատերագիտական բառարան» (1986), «Մեծերը ամենամեծի մասին» (1999) ժող-ը: Թարգմանել է Ն. Կունի, Ա. Պ. Չեխովի, Ս. Ցվայգի և ուր. գործերից:

ՀԽՍՀ Պետ. (1983), ՀԳՄ Մ. Նալբանդյանի անվ. (1988) մրց-ներ:

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ Հովիկ Հովհաննեսի (1936–2016), կինոռեժ.: Լևոն *Հախվերդյանի* եղբայրը: 1959–62-ին՝ Հայֆիլմի, 1961–71-ին՝ հեռուստապետկոմի, 1971-ից՝ «Երևան» կինոստուդիայի կինոռեժ. («Վարդան Աճեմյան», 1972, «Վասպուրական», 1973, «Գորանի», 1977, «Լուսավորչի կանթեղը», 1999, չորսն էլ՝ վավերագր., «Սերոբի ծառը», 1978, գեղ. ֆիլմ, ևն): Ստեղծել է նաև «Մատենադարան» ֆիլմաշարը (I–XX, 1983–2002, սցենարը՝ Հ-ի և Կ. Բակշիի):

ՀԽՍՀ Պետ. մրց. (1988):

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ Ռուբեն Լևոնի (ծ. 1950), ռեժ., Հայաստանում հեղինակ. երգի սկզբնավորողներից: Լևոն *Հախվերդյանի* որդին: 1968–87-ին՝ հայկ. հեռուստատեսության ռեժ. (Ի. Շտոկի «Սատանայի ջրաղացը», 1975, երգերի հեղինակ՝ Հ., ևն): Հեղինակ է «Իմ տունն անիվների վրա» (1996) համերգ-ներկայացման, մանկ. երգերի, կինոերաժշտության ևն: Լավագույն երգերից են՝ «Նավակ», «Ձյունը», «Շները», «Երևանի գիշերներում», «Մեր սիրո աշունը», «Իմ փոքրիկ ընկեր» «Հին ընկեր», «Երազ», «Շատախոս անձրևը» ևն:

ՀՀ «Մովսես Խորենացի» (1998), ՄՆ ոսկե (2006) մեդալներ, ԹՄՄ մրց. (2008):

ՀԱԽՎԵՐԴՈՎ Իոսիֆ Նիկոլայի (1916–2007), շին-յան բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1958), պրոֆ. (1956), Բելառուսի ԳԱ թղթ. անդամ (1960): Բելառուսի գիտ. վաստ. գործիչ (1989): Աշխ-ները վերաբերում են շին. մեխանիկային, բետոնի խառնուրդների, բետոնի ամրության և ձևափոխելիության, բետոնե ու երկաթբետոնե խողովակների, շինվածքների և կառուցվածքների պատրաստման տեխնոլոգիայի հարցերին: Մշակել է մեծածավալ կառույցների վերջրյա և ստորջրյա

բետոնապատման, ճնշում. և անճնշում. երկաթբետոնե խողովակների պատրաստման մեթոդներ:

ԽՍՀՄ Կարմիր աստղի (1943) և «Պատվո նշան» (1966) շքանշաններ:

ՀԱԽՎԼԵՐԴՈՎ, Իվան Վասիլի (Հախվերդյան Հովհաննես Բարսեղի, 1873–1921), ռուս. բանակի գեն.-լեյտ.: Ռուս.-ճապոն. պատերազմի (1904–05) տարիներին ծառայել է Ռուսաստանի ՋՈՒ-ի ԳՇ-ում: Ա.Հ.Պ-ի ժամանակ նշանակվել է 3-րդ ֆինլանդ. գնդի (Լվով) հրամ., ապա՝ Տրապիզոնի 127-րդ հետևակ. դիվիզիայի շտաբի պետ, Կովկաս. 2-րդ հեծելազոր. կորպուսի հրամ. (Պարսկաստան), 1917-ի հունիսին՝ 5-րդ ֆինլանդ., ապա՝ 3-րդ հրաձգ. դիվիզիաների հրամ. (Հվ.-արմ. ռազմաճակատ): 1917-ի վերջին տեղափոխվել է Կովկաս: 1918-ի հունիսի 15-ից՝ ՀՀ (1918–20) ռազմ. նախարար: Հանրապետության անկումից հետո բանտարկվել է, ապա՝ գնդակահարվել:

ՀԱԽՎԵՐԴՈՎ (Ախվերդով, Հախվերդյան) Ֆեոդոր Եսայու (1773–1820), ռուս. բանակի գեն.-մայոր: 1807–12-ին եղել է Վրաստանի կառավարիչ, 1812-ից՝ Կովկասում գործող 19-րդ դիվիզիայի հրամ., 1816-ից՝ վրաց. առանձին կորպուսի հրետանու պետ:

ՀԱԽՈՒՄ, գետ ՀՀ Տավուշի մարզում, Կուրի աջ վտակը: Սկիզբ է առնում Միափորի լ.-շղթայի հս. լանջերից՝ 2810 *մ* բարձր.-ից: Երկ.՝ 71 *կմ*, ավազանը՝ 352 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1,56 *մ*^{3}/*վ*, առյլն՝ 37 *մ*^{3}/*վ*: Հ.-ի վրա կառուցվել է *Հախումի ջրամբարը*:

ՀԱԽՈՒՄԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, ՀՀ Տավուշի մարզում: Ձրբաժան է Աղստև և Հախում գետերի միջև: Երկ.՝ մոտ 40 *կմ*, բարձր.՝ մինչև 2000 *մ*: Լանջերը ծածկված են հաճարենու և սոճու անտառներով:

ՀԱԽՈՒՄԻ ՋՐԱՄԲԱՐ, ՀՀ Տավուշի մարզում՝ *Հախում* գետի վրա՝ Պառավաքար գ.-ի մոտ՝ 670 *մ* բարձր.-յան վրա: Շահագործվել է 1985-ից: Մակերեսը՝ 0,84 *կմ*^{2}, միջին խոր.՝ 15 *մ*, ջրատարողությունը՝ 12 *մլն մ*^{3}, ջրթողքը՝ 4,9 *մ*^{3}/*վ*:

ՀԱԽՈՒՄՅԱՆ Արսեն Ալեքսանդրի (ծ. 1950), ռադիոֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (2014): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2014): ՀՀ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստ-ի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են մմ-ային և ենթամմ-ային ալիքների ֆիզիկային, բարձրջերմաստիճան. գերհաղորդականությանը, ռադիոտեղորոշման և հեռահաղորդակց. համակարգերին:

ՀԽՍՀ Պետ. մրց. (1988), ՀՀ «Անանիա Շիրակացի» (2013), Գիտ-յան պետ. կոմիտեի Ոսկե (2010) մեդալներ:

ՀԱԽՈՒՄՅԱՆ Սեմյոն Տիգրանի (1930–2016), գրականագետ: Բանասիր. գիտ. թեկնածու (1954), պրոֆ. (1991): Տիգրան *Հախումյանի* որդին: 1973–89-ին՝ ՀԽՍՀ ժողկրթության նախարար: Հեղինակ է «Խոհեր անցյալի մասին» (2002), «Անցյալից» (2006, երկուսն էլ՝ ռուս.) հուշերի ու հոդվածների ժող-ների, «Մ. Գորկին և Հայաստանը» (համահեղ., 1968) և այլ աշխ-ների: ՀԽՍՀ Պետ. մրց. (1988):

ՀԱԽՈՒՄՅԱՆ Սիմեոն Գասպարի (1859–1905), խմբ., գրող, թարգմանիչ: 1882–84-ին՝ «Գործ», 1901–02-ին՝ «Ժամանակ» պարբ-ների հրտ.: Հեղինակ է «Մանիկ» (1889) վիպակի: Թարգմանել է Է. Լեֆլերի, Հ. Իբսենի, Օ. Շմիդտի գործերից:

ՀԱԽՈՒՄՅԱՆ Տիգրան Սիմեոնի (1894–1973), գրականագետ, թարգմանիչ, խմբ.: Պրոֆ. (1961): ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1943): Սեմյոն *Հախումյանի* հայրը: 1918–19-ին՝ «Ժողովրդի ձայն», 1919-ին՝ «Նոր կեանք», 1920–21-ին՝ «Աշակ» պարբ-ների խմբ.: Հեղինակ է «Թշնամին» (1931), «Այգաբացին» (1932) պիեսների, «Անտոն Չեխով: Նրա կյանքը և ստեղծագործությունը» (1944), «Դերենիկ Դեմիրճյանի դրամատուրգիան» (1958) աշխ-ների, «Գրական հոդվածներ և հիշողություններ» (ռուս., գիրք 1, 2, 1966, 1971), «Հուշեր» (1987) ժող-ների:

ՀԱԶՄԱՆԱՎ, *ռազմանավ*, Հ.՝ որպես ռազմանավերի դաս, երևան է եկել Մեծ Բրիտանիայում 1860-ական թթ-ին: ԵՀՊ-ի ժամանակ եղել են 2 տեսակի՝ թեթև և ծանր: Ժամանակակից ՌԾՈՒՀ-ում կան հրթիռ., հակասուզանավ. և այլ ռազմանավեր:

ՀԱԿԱԱՇԽԱՐՀ, վարկածային տիեզ. օբյեկտներ (աստղերի կամ գալակտիկաների տիպի), որոնք կազմված են *հականյութից*:

ՀԱԿԱԲԻՈՏԻԿՆԵՐ, **անտիբիոտիկներ** (< *անտի*... և հուն.՝ bios – կյանք), միկրոօրգանիզմների կենսագործունեությունից առաջացած, նաև բուս. և կենդ. բջիջներից ստացված օրգ. նյութեր, որոնք օժտված են մանրէների տարբեր տեսակների աճն ու բազմացումն ընկճող կամ դրանց ոչնչացնող հատկություններով:

ՀԱԿԱԳԱԶ, մարդու շնչառ. օրգանները, աչքերն ու դեմքը թունավոր նյութերից, ռադիոակտիվ փոշուց և օդում գազի կամ գոլորշու ձևով պարունակվող այլ նյութերից պաշտպանող հիմն. անհատ. միջոց (սարք): Լինում են **զտող** և **մեկուսացնող**:

ՀԱԿԱԳՐՈՀ, պաշտպանվող զորքի գրոհ, որի նպատակը պաշտպ-յան մարտ. կարգերը ներխուժած հակառակորդի զորքերի ջախջախումն ու կորցրած մարտավար. դրության վերականգնումն են: Իրականացվում է հիմնականում 2-րդ էշելոնի և պահեստազորի ուժերով:

ՀԱԿԱԴԱՐԶ ԱԼԻՔԻ ԼԱՄՊ, *էլեկտրավակուումային սարք*՝ ԳՀՀ էլեկտրամագնիս. տատանումների գեներացման համար, որոնք առաջանում են էլեկտրոն. հոսքի և էլեկտրոնների շարժմանը հակառակ ուղղությամբ վազող դանդաղեցված էլեկտրամագնիս. ալիքի փոխազդեցության հետևանքով: Կիրառվում է հիմնականում ԳՀՀ տատանումներ գեներացնելու համար:

ՀԱԿԱԴԱՐԶ ԲԱՌԱՐԱՆ, շրջուն բառարան, բառարան, որտեղ խորագրային բառերը դասավորվում են այբբեն. հերթականությամբ ոչ թե բառի սկզբից մինչև վերջ (ինչպես բառարաններում մեծ մասի դեպքում), այլ վերջից սկիզբ («Հայոց լեզվի հանգարառարան», 1976): Հ. բ-ները կազմվում են այն լեզուների համար, որտեղ բառի վերջը (վերջավորություն, վերջածանց) ունի քերական. ավելի մեծ դեր, քան սկիզբը (նախածանցներ):

ՀԱԿԱԴԱՐԶ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՉԱՓԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ, **շրջանային ֆունկցիաներ** (մաթ.), *եռանկյունաչափական ֆունկցիաներին* հակադարձ ֆունկցիաներ՝ արկսինուս, արկկոսինուս, արկտանգես, արկկոտանգես, արկսեկանս և արկկոսեկանս, որոնցից յուրաքանչյուրն արտահայտում է նույն ուղղի (կամ անկյան) մեծությունը, որը համապատասխանում է տվյալ եռանկյունաչափ. ֆունկցիաների x արժեքին, օր.՝ արկսինուս (arcsinx) նշանակում է այն աղեղը, որի սինուսը հավասար է x-ի:

ՀԱԿԱԴԱՐԶ ԹԵՈՐԵՄ, թեորեմ, որի պայմանը նախնական (ուղիղ) թեորեմի եզրակացությունն է, իսկ եզրակացությունը՝ պայմանը:

ՀԱԿԱԴԱՐԶ ԹԻՎ, թիվ, որի և տվյալ թվի արտադրյալը հավասար է 1-ի: 2 այդպիսի թվերն անվանվում են փոխադարձաբար հակադարձ: Այդպիսին են, օր., 5 ու 1/5, –2/3 ու –3/2 ևն:

ՀԱԿԱԴԱՐԶ ԿԱՊ, որևէ համակարգի (օբյեկտի) գործունեության արդյունքների ազդեցությունն այդ գործունեության ընույթի վրա: Հ. կ. անվանում են դրական, եթե նրա ազդեցությունն ուժեղացնում է համակարգի գործունեության արդյունքները, և բացասական, եթե թուլացնում է: Դրական Հ. կ. սովորաբար հանգեցնում է համակարգի անկայուն աշխ-ի, բացասական Հ. կ. կայունացնում է համակարգի գործունեությունը, նրա աշխ-ը դարձնում հաստատուն: Կիրառվում է ***ավտոմատ կառավարման համակարգերում,*** ռադիոէլեկտրոնիկայի սարքվածքներում ևն: Հ. կ. գործում է նաև բոլոր կենդանի օրգանիզմներում:

ՀԱԿԱԴԱՐԶ ՄԱՏՐԻՑ, տվյալ քառակուսի A *մատրիցի* համար այնպիսի նույն կարգի B մատրից, որպեսզի տեղի ունենա AB = BA = E հավասարումը, որտեղ E-ն միավոր մատրից է:

ՀԱԿԱԴԱՐԶ ՅԱՆՑ (ֆիզ.), կետային եռաչափ ցանց՝ վերացական հակադարձ տարածությունում, որտեղ հեռ-յուններն ունեն երկ-յան հակադարձ չափայնություն: Հ. ց. հասկացությունը հարմար է բյուրեղներում ռենտգեն. *ճառագայթների, նեյտրոնների* և *էլեկտրոնների* դիֆրակցիան նկարագրելու համար:

ՀԱԿԱԴԱՐԶ ՖՈՒՆԿՑԻԱ, օրենք, որը հակադարձում է տրված ֆունկցիայով արտահայտված կախվածությունը: Այսպես, եթե y = f(x)-ը տրված ֆունկցիան է, ապա x-ը, որպես y փոփոխականի ֆունկցիա դիտարկելիս՝ x = φ(y), կլինի f (x)-ի Հ. ֆ., ընդ որում՝ f (x)-ի որոշման տիրույթն իր Հ. ֆ-ի փոփոխման տիրույթն է, և հակառակը: Օր.՝ $x = \sqrt[3]{y}$ -ը Հ. ֆ. է $y = x^3$-ի նկատմամբ:

ՀԱԿԱԴԱՐԶԵԼԻ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ, քիմ. ռեակցիաներ, որոնք նույն համակարգում ընթանում են 2 հակադիր ուղղություններով, հավասար արագություններով: Եթե հակառակ ռեակցիայի արագությունն ուղիղ ռեակցիայի արագության համեմատությամբ անտեսելի փոքր է, ռեակցիան կոչվում է ոչ հակադարձելի:

ՀԱԿԱԴԱՐՎԻՆԻՈՄ, բնական ընտրության մասին Դարվինի ուսմունքին հակադրվող տարբեր ըմբռնումների ամբողջություն: Այդպիսիք են նեոլամարկիզմի տարբեր ձևերը, աուտոգենեզը, էկտոգենեզը, օրթոգենեզը, սալտացիոնիզմը, կատաստրոֆիզմը ևն:

ՀԱԿԱԴԵՅՏՐՈՆ, ջրածնի ծանր իզոտոպի հակամիջուկ, որը բաղկացած է *հականեյտրոնից* և *հակապրոտոնից*:

ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ, **օքսիմորոն** (հուն.՝ oxymoron – սրամտորեն հիմար), ոճ. հնար, շարահյուս. դարձվածք, երբ հակադրվում են արտաքուստ անհամատեղելի, հակառակ իմաստով բառեր, մտքեր, պատկերներ (օր.՝ անմեղ մեղավոր, լուսավոր թախիծ, խոսուն լռություն, կույր աչքով տեսնել ևն):

ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ, դիա-

լեկտիկայի օրենքներից. բացահայտում է օբյեկտիվ իրականության և ճանաչողության շարժման ու զարգացման աղբյուրը: Ըստ օրենքի՝ յուրաքանչյուր զարգացման հիմքում հակասությունն է՝ հակադիր կողմերի և միտումների պայքարը, որը, միևնույն ժամանակ, ներքին միասնության և փոխներթափանցման հարաբերության մեջ է:

ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՊԱՀ մարդու, օրգանիզմի՝ ազդանշանն ընդունելու պահից մինչև պատասխան հակազդեցությունն ընկած ժամանակահատվածը: Հ. պ. այն չափանիշներից է, որոնցով որոշում են մարդու պիտանիությունը որոշակի մասնագիտություններում՝ գործարկման ղեկ., կարգավար, վարորդ, տիեզերագնաց, և հաշվի են առնում կառավարման ավտոմատ համակարգերի հաշվարկներում:

ՀԱԿԱԲՆԿՃՈՒՄԱՅԻՆ ԴԵՂԱՆՅՈՒԹԵՐ, անտիդեպրեսանտներ (< *անտի*... և լատ.՝ deprimo – ճնշել), տարբեր քիմ. կազմությամբ և ազդեցության մեխանիզմներով հոգեհակ (պսիխոտրոպ) միջոցներ, որոնք բարձրացնում են տրամադրությունը, հոգեկան ակտիվությունը, վերացնում տագնապի և լարվածության զգացողությունը: Օգտագործվում են հոգեկան ընկճվածության ժամանակ:

ՀԱԿԱԹԵԶԻՄ, *թեզիսին* հակադիր դատողություն տրամաբ–յան մեջ, Գ. *Հեգելի* փիլ–յան մեջ՝ *տրիադայի* աստիճաններից, դիալեկտիկ. զարգացման բացասման պահը:

ՀԱԿԱԹՈՒՅՆ, **անտիդոտներ** (հուն.՝ antidoton – բառացի՝ ընդդեմ տրվող), դեղամիջոց, որը վնասազերծում կամ թուլացնում է օրգանիզմ ներթափանցած թույների ազդեցությունը:

ՀԱԿԱԼԻՄՖՈՑԻՏԱՅԻՆ ՇԻՀՄՈՒԿ, կենդանու արյան շիճուկ՝ իմունացված այլ տեսակի կենդանու կամ մարդու (դոնորի) լիմֆոցիտներով: Ընկճում է ավշանման (լիմֆոիդ) հյուսվածքի ֆունկցիան և իմուն. հակազդեցությունները:

ՀԱԿԱԼՈԳԱՐԻԹՄ, N թիվ, որի լոգարիթմը, ըստ տվյալ a հիմքի, հավասար է տվյալ n թվին՝ $\log_a N = n$. պայմանականորեն նշանակվում է $N = \text{antilog}_a n$: *Լոգարիթմի* հակադարձ ֆունկցիան է: Հ. գտնել՝ նշանակում է թվի հայտնի լոգարիթմով գտնել տվյալ թիվը $\ln_a$–ի Հ. e^a-ն է, $\lg_a$–ի Հ.՝ 10^a:

«ՀԱԿԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ», 1930–ական թթ–ի 2–րդ կեսին մի շարք անձանց նկատմամբ հարուցված քր. գործ՝ հակախորհրդ., լրտես., ահաբեկչ. գործունեության, Ս. Մ. Կիրովի սպանության, կուս. և կառ–յան ղեկ–ների սպանության նախապատրաստման մեղադրանքով: Գործի շրջանակներում ներգրավվել է 16 մարդ., այդ թվում՝ Գ. Ե. Զինովևը և Լ. Բ. Կամենևը: Դատավարությունն ընթացել է Մոսկվայում 1936–ի օգոստ. 19–24–ը: Բոլոր մեղադրյալները դատապարտվել են գնդակահարության:

ՀԱԿԱՆԻՆՆԵՐ, **անտիգեններ**, օրգանիզմի համար օտարածին և առանձնահատուկ իմուն. պատասխան առաջացնող բարձրմոլ. նյութեր: Ունակ են փոխազդելու իմուն. համակարգի և հակամարմինների հետ: Հ. օրգանիզմ թափանցելիս կարող են ձևավորել ***իմունիտետ***, առաջացնել իմունաբան. տոկունություն՝ հանդուրժողականության (հակածինին անպատասխանելիության) վիճակ: Հ–ի հատկություններով են օժտված սպիտակուցները, բազմաշաքարները և այլ մակրոմոլ–ներ:

ՀԱԿԱԿՇԻՌ, մեքենաներում, մեխանիզմներում, կառույցներում (օր.՝ բեռնամբարձիչներում, վերելակներում) գործող ուժերն ու մոմենտները հավասարակշռող բեռը:

ՀԱԿԱԿՈՄԻՆՏԵՐՆՅԱՆ ԴԱՇԻՆՔ, պայմանագիր Գերմանիայի և Ճապոնիայի միջև՝ կնքված 1936–ի նոյեմբ. 25–ին Բեռլինում: Նպատակը Կոմինտերնի դեմ պայքարի պատրվակով այդ պետությունների համաշխ. գերիշխանությունը հաստատելն էր: 1937–ի նոյեմբ. 6–ին Հ. դ–ին է միացել Իտալիան, հետագայում՝ այլ պետություններ: 1939–40–ին Հ. դ. վերածվել է բացահայտ ռազմ. դաշինքի (տես *Բեռլինի պակտ 1940*):

ՀԱԿԱԿՈՌՈԶԱՅԻՆ ՊԱՏՎԱՍՔ, շինվածքների բարակ շերտով պատվածք՝ դրանք արտաքին միջավայրի ներգործությունից՝ *կոռոզիայից*, պաշտպանելու և գեղազարդիչ տեսք տալու համար: Լինում են մետաղի (ցինկապատ, նիկելապատ, քրոմապատ, անագապատ ևն), լաքաներկ, նաև արծնապակու օքսիդ. թաղանթների, ռետինապատվածքի և այլ տեսքով:

ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, հաս. գործընթաց, երբ ***հեղափոխության*** հետևանքով իշխանությունից գրկված դասակարգը ձգտում է վերականգնել իր դարն ապրած հասարակարգը:

ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒՋՈՒԹՅՈՒՆ, գործունեության տեսակ, որն իրականացնում են հատուկ մարմինները՝ ուղղված մեկ այլ պետության ***հետախուզության*** դեմ: Գործում է բոլոր (այդ թվում՝ բարեկամ) պետությունների հետախուզությունների դեմ: Պայքարում է հատուկ ծառայությունների լրտես., դիվերսիոն, ահաբեկչ. գործունեության դեմ:

ՀԱԿԱՀԵՐՈՍ, XX դ–ի 2–րդ կեսի արևմտաեվրոպ. և ամերիկ., մասնավորապես՝ մոդեռնիստ. և պոստմոդեռնիստ. գրկ–յան հիմն. կերպարը, որը հակադրվում է կերպար–հերոսին՝ իր գեղագիտ. իդեալի (որն առավելապես հակահդեալն է) տեսանկյունից: «Հասարակության» մարդը, հայտնվելով ժամանակակից քաղ–յան ավերիչ և կործանարար իրականության մեջ, իռացիոնալ և աբսուրդ. ուժերի ճնշման տակ վերածվում է հաս–յունից ֆիզիկապես և հոգեպես օտարված, լքված և անտեսված դիմազուրկ կցորդի (տես *Նոր վեպ*, *Աբսուրդի դրամա*): Լայն և առավել պայման. իմաստով՝ հերոս. հիմն. գծերից զուրկ գր. հերոսի կերպար (օր.՝ Ա. Քամյուի «Օտարը», Ա. Գ. Բիտովի «Պուշկինի տունը»): Հայ գրկ–յան մեջ Հ–ի կերպարը տարածվել է հետանկախության շրջանում (Գ. Խանջյանի «Նստիր Ա գնացքը», «Ենոքի աչքը» վեպերում, «Թատրոն 301» պիեսում, Ն. Ադալյանի «Ապոկալիպսիս» վիպակում, «Համաճարակ» վեպում):

ՀԱԿԱՀԻՏԼԵՐՅԱՆ ԴԱՇԻՆՔ, ԵՀՊ–ի ընթացքում ձևավորված միություն. ներառել է ԽՍՀՄ–ը, ԱՄՆ–ն, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Չինաստանը, նաև այն բոլոր պետությունները, որոնք մասնակցել են Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի ռազմ. դաշինքի դեմ գործողություններին: Պատերազմի վերջին Հ. դ–ի մեջ ընդգրկված էր ավելի քան 50 պետություն:

ՀԱԿԱՀՈՍԱՆՔ, 1. ծով. հոսանք, որի ուղղությունը հակառակ է տվյալ շրջանում գերակշռող քամիներին (օր.՝ միջպասատ. Հ.): 2. Ջերմափոխանակիչ համակարգում ջերմակիրների հակառակ ուղղություններով զուգահեռ շարժումներ:

ՀԱԿԱՀՐԹԻՌԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ուժերի և միջոցների, նաև թշնամու հրթիռ. հարձակումները հետ մղող միջոցառումների ու մարտ. գործողությունների համալիր՝ թշնամու բալիստիկ հրթիռները կամ միջուկ., քիմ. և կենսբ. զենքերով հանդերձված այդ հրթիռների գլխամասերը թռիչքի հետագծում (հիմնականում՝ մեծ բարձր–ների վրա) ոչնչացնելու նպատակով:

ՀԱԿԱՃԱՅԹԻՉՆԵՐ, շարժիչ. վառելանյութերի մեջ փոքր քանակություններով (1 %–ից պակաս) ավելացվող նյութեր՝ ***ներքին այրման շարժիչներում*** ճայթյունները նվազեցնելու նպատակով: Տես նաև *Օկտանային թիվ*:

ՀԱԿԱՄԱԿԱՐԴԻՉՆԵՐ, **անտիկոագուլանտներ** (< ***անտի***... և լատ.՝ coagulans – մակարդում առաջացնող), արյան մակարդելիությունը նվազեցնող դեղանյութեր:

ՀԱԿԱՄԱՄՆԻԿՆԵՐ, ***տարրական մասնիկներ***, որոնք ունեն նույն զանգվածը, ***սպինը***, կյանքի տևողությունը և ներքին այլ բնութագրեր, ինչ նրանց «երկվորյակ» մասնիկները, սակայն տարբերվում են էլ. լիցքի և մագնիս. մոմենտի նշանով, ***բարիոնային*** և ***լեպտոնային լիցքերով***, տարօրինակությամբ և այլ հատկանիշներով: Բոլոր տարր. մասնիկները, բացի բացարձակ չեզոքներից, ունեն իրենց Հ.: Մասնիկները և Հ. բախվելիս ***անհիմնացվում*** են:

ՀԱԿԱՄԱՐՄԻՆՆԵՐ, մարդու և տաքարյուն կենդանիների արյան պլազմայի գլոբուլինային սպիտակուցներ (իմունոգլոբուլիններ), որոնք օժտված են հակածինների հետ առանձնահատուկ կերպով կապվելու հատկությամբ: Միկրոօրգանիզմների հետ փոխազդելով՝ խոչընդոտում են դրանց բազմացումը կամ չեզոքացնում արտադրած թունավոր նյութերը:

ՀԱԿԱՄՈՒՏԱԾԻՆՆԵՐ, **անտիմուտագեններ**, քիմ. և ֆիզ. գործոններ. նվազեցնում են օրգանիզմում ժառանգ. փոփոխությունների (մուտացիաներ) հաճախությունը (օր.՝ սուլֆհիդրիլ միացությունները):

ՀԱԿԱՆԵԽԻՋ ՄԻՋՈՑՆԵՐ, 1. (բժշկ.) **անտիսեպտիկ միջոցներ**, հակամանրէային ներգործությամբ օժտված նյութեր. օգտագործում են հիմնականում վարակազերծման, մաշկին և լորձաթաղանթներին քսելու, վերքերը և խոռոչները ողողելու նպատակով (օր.՝ ջրածնի գերօքսիդ, ադամանդականաչ ևն): 2. (Շին.) քիմ. նյութեր, օգտագործում են միկրոօրգանիզմների առաջացրած փայտանյութի փտումը, պլաստմասսայի, կաշվի, մննդամթերքի ևնի քայքայումը կանխելու համար:

ՀԱԿԱՆԵԽՈՒԹՅՈՒՆ, **անտիսեպտիկա** (< ***անտի***... և հուն.՝ septicos – նեխական), վերքերի վարակման կանխարգելման և վարակված վերքերի բուժման մեթոդ՝ ախտածին մանրէների վրա քիմ. հականեխիչ միջոցների ներգործությամբ կամ կենսբ. եղանակներով: Առաջարկել է Ջ. *Լիստերը* 1867–ին:

ՀԱԿԱՆԵՅՏՐԻՆՈ, ***նեյտրինոյի*** հակամասնիկը. պայման. նշանակումը՝ 2 υ կամ 4 υ, ***սպինը*** ՝ 1/2, զանգվածը՝ 0:

ՀԱԿԱՆԵՅՏՐՈՆ, ***նեյտրոնի*** հակամասնիկը. պայման. նշանակումը՝ n կամ 2n, սպինը՝ ½, զանգվածը՝ 939, 56 *ՄէՎ*:

ՀԱԿԱՆՅՈՒԹ, *հակամասնիկներից* կազմված նյութ: Հ–ի ատոմի միջուկները կազմված են ***հակապրոտոններից*** և ***հականեյտրոններից,*** իսկ ատոմների թաղանթները՝ ***պոզիտրոններից:***

ՀԱԿԱՇՓԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ, **անտիֆրիկցիոն նյութեր** (< ***անգլ.*** *...* և անգլ.՝ friction – շփում), շփման ցածր գործակից ունեցող նյութեր: Կիրառվում են հիմնականում սահքի պայմաններում աշխատող դետալներ (առանցքակալներ, վոաններ, ներդրակներ) պատրաստելու համար: Հ. ն. են անագի կամ կապարի (բաբիտներ), պղնձի (բրոնզներ), երկաթի (գորշ թուջ) հիմքով համաձուլվածքները, պլաստմասսաները (տեքստոլիտ, ֆտորոպլաստ–4 ևն), մետաղախեցեգործ. համաձուլվածքները (բրոնզագրաֆիտ, երկաթագրաֆիտ), բնափայտի և փայտե շերտերով պլաստիկները, ռետինները:

ՀԱԿԱՊԱՊ, կաթոլիկ եկեղեցու չընդունած *Հռոմի պապ*: Միջնադարում երբեմն պատահել է, որ պապ. գահին միաժամանակ եղել են մի քանի պապեր (տարբեր կրոն. խմբավորումների դրածոներ): Եկեղեցին նրանցից միայն մեկին է ընդունել որպես պապ, մյուսները կոչվել են Հ–եր: Կաթոլիկ եկեղեցու կազմած պապերի ցուցակում նշվում է 30 Հ. (III–XV դդ.):

ՀԱԿԱՊՈՍՏՈՂ, *պրոտոնի* հակամասնիկը. պայման. նշանակումը՝ $\bar{p}$ կամ $\bar{p}$, սպինը՝ 1/2, զանգվածը՝ 938,27 ***ՄէՎ***:

ՀԱԿԱՋՂԱՋԳՈՒՄԱՅԻՆ ԴԵՂԱՆՅՈՒԹԵՐ, տարբեր ծագման դեղանյութեր, որոնք օժտված են ջղաձգության նոպաները կանխելու կամ վերացնելու հատկությամբ: Ժամանակակից բժշկության մեջ Հ. դ. են համարվում այն պատրաստուկները, որոնք օգտագործվում են *էպիլեպսիայի* կամ *պարկինսոնիզմի* բուժման համար:

ՀԱԿԱՌԵՖՈՐՄԱՑԻԱ, եկեղեցաքաղ. շարժում Եվրոպայում XVI դ–ի կես–XVII դ–ում՝ պապականության գլխավորությամբ՝ *Ռեֆորմացիայի* դեմ: Հ–ի պայքարի միջոցներն էին *ինկվիզիցիան*, վանական միաբանությունները (օր.՝ ճիզվիտները): Ավարտվել է աուգսբուրգյան կրոն. հաշտությամբ՝ եկեղեցու վարչակառուցվածք. փոփոխություններով և պապի ձեռքում իշխանության կենտրոնացմամբ:

ՀԱԿԱՍԱՌԻԶՆԵՐ, **անտիֆրիզներ** (< ***անգլ.*** *...* և անգլ.՝ freeze – սառչել), որոշ նյութերի (էթիլենգլիկոլ, գլիցերին, անօրգ. աղեր ևն) ջր. լուծույթներ, որոնք ցածր ջերմաստիճաններում չեն սառչում: Օգտագործում են ներքին այրման շարժիչների սառեցման համակարգերում՝ շրջապատող օդի –75°–ից մինչև 0°C ջերմաստիճաններում:

ՀԱԿԱՄԵՄԻՏԻԶՄ, **հակասեմականություն**, ազգ. և կրոն. անհանդուրժողականություն հրեաների նկատմամբ (եզրույթն առաջացել է 1870–80–ական թթ–ին): Ունեցել է զանազան դրսևորումներ՝ կեղծ մեղադրանքներից և բռնություններից մինչև արյունալի հաշվեհարդարներ և ցեղասպանություն: Իր գագաթնակետին է հասել ֆաշիստ. Գերմանիայում (տես *Հոլոքոստ*):

ՀԱԿԱՄՈՒՋԱՆԱՎԱՅԻՆ ԱՎԻԱՑԻԱ, ՌԾՈՒ (ՌԾՈՒԻ կամ ՌՕՈՒ), ավիացիայի տեսակ. նախատեսված է սուզանավերի դեմ պայքարելու, նաև ծովերում նավերի երթևեկությունը պաշտպանելու համար: Լինում են ափային և նավային Հ. ա–ներ, սպառազինության մեջ կան հակասուզանավ. ինքնաթիռներ և ուղղաթիռներ:

ՀԱԿԱՄՈՒՋԱՆԱՎԱՅԻՆ ՆԱՎԵՐ, վերջրյա մարտ. նավերի դաս. նախատեսված է թշնամու սուզանավերը հայտնաբերելու և ոչնչացնելու, նաև սեփ. սուզանավերի գործողություններն ու վերադարձն ապահովելու, ծովերում նավերի երթևեկությունը պաշտպանելու համար: Լինում են հակասուզանավ. հածանավեր, ֆրեգատներ (ռազմանավեր), մեծ և փոքր պահակային Հ. ն.: Հ. ն–ի սպառազինության մեջ կան հակասուզանավ. հրթիռ. զենք, տորպեդներ, ռեակտիվ ռմբանետներ, խորքային ռումբեր, ինքնապաշտպան. միջոցներ:

ՀԱԿԱՄՈՒՋԱՆԱՎԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, մարտ. գործողություններ և հատուկ միջոցառումներ. իրականացնում է ռազմ. նավատորմը՝ հակառակորդի սուզանավերի որոնման ու ոչնչացման նպատակով՝ նավերի, ռազմանավերի և ափամերձ օբյեկտների վրա նրանց հարձակումները, հետախուզ. ու ականապատման աշխ–ները խոչընդոտելու համար: Իրականացվում է ռազմ. նավատորմի ռազմանավերով, տախտակամած. ավիացիայով, ինչպես նաև ռազմածով. ավիացիայի առափնյա ուժերով:

ՀԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ (ձևական տրամաբ–յան մեջ), 2 արտահայտությունների առկայություն (դատողության, տեքստի, տեսության մեջ), որոնցից մեկը մյուսի ժխտումն է, այդ արտահայտությունների շաղկապված ապացուցելիությունը կամ դրանց համարժեքությունը, լայն իմաստով՝ միմյանցից ակնհայտորեն տարբեր օբյեկտների նույնությունը հաստատող դրույթ: Հ. մատնանշում է իրեն հանգեցվող դատողության տրամաբ. արատավորությունը կամ դատողության հիմքում ընկած նախադրյալների անհամատեղելիությունը: Հաճախ օգտագործում են հերքումների ժամանակ և անուղղակի ապացույցներում:

ՀԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ ԴԻՄԱԼԿՏԻԿԱԿԱՆ, օբյեկտի կամ համակարգի հակադիր, իրարամերժ կողմերի փոխներգործություն, որոնք, այդուհանդերձ, ներքին միասնության և փոխներթափանցման հարաբերության մեջ են՝ համարվելով բնության ինքնաշարժման և զարգացման, հաս–յան և իմացության աղբյուր:

ՀԱԿԱՎԻՏԱՄԻՆՆԵՐ, **անտիվիտամիններ**, կենդանի բջիջների՝ վիտամինների յուրացումը խոչընդոտող միջոցներ՝ նրանց քայքայման, ոչ ակտիվ ձևերում կապման, քիմ. կառուցվածքով վիտամիններին մոտիկ, սակայն հակառակ կենսբ. ազդեցությամբ օժտված, միացություններով տեղակալման հետևանքով:

ՀԱԿԱՏԱՆԿԱՅԻՆ ՀՐԵՏԱՆԻ, վերերկրյա հրետանու տեսակ՝ տանկեր և այլ զրահապատ թիրախներ ոչնչացնելու համար: Սպառազինության մեջ կան հակատանկ. թևդանոթներ, անհետադրոք հրանոթներ, հակատանկ. կառավարվող հրթիռներ:

ՀԱԿԱՏՈՔՍԻՆՆԵՐ, **անտիտոքսիններ**, առանձնահատուկ սպիտակուցներ (հակամարմիններ), որոնք վնասազերծում են միկրոօրգանիզմների (օր.՝ պրկախտային, դիֆթերիային), բույսերի (ռիցին, աբրին) և կենդանիների (օձեր, կարակուրտ) թույները:

ՀԱԿԱՔՐԻՍՏՈՍ, քրիստոնեության մեջ *Հիսուս Քրիստոսի* հակառակորդը. հայտնվելու է «աշխարհի վերջին» և պարտվելու է Քրիստոսին:

ՀԱԿԱՕԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԻԱՑԻԱ, ՀՕՊ–ի զորքերի տեսակ: Բաղկացած է կործանիչ ավիացիայի զորամասերից ու ռազմափոխադր. ավիացիայի և ուղղաթիռների ստորաբաժանումներից:

ՀԱԿԱՕԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (ՀՕՊ), հակառակորդի օդային հարձակումը կասեցնելու միջոցառումների համախումբ: Իրականացվում է զենիթ. հրթիռ. զորքերով, զենիթ. հրետանիով, կործանիչ ավիացիայով և այլ ուժերով ու միջոցներով: Տարբերում են երկրի, զորքի և նավատորմի ՀՕՊ: 2016–ին ստեղծվել է ՌԴ և ՀՀ տարածաշրջ. միացյալ ՀՕՊ համակարգ:

ՀԱԿԱՕՔՍԻԴԱՆՏՆԵՐ, **հակաօքսիդիչներ**, բնական կամ սինթետիկ միացություններ, որոնք դանդաղեցնում կամ կանխում են օրգ. նյութերի օքսիդացումը: Կիրառում են վառելանյութերն ու պոլիմերները կայունացնելու և սննդամթերքի փչացումը կանխելու համար:

ՀԱԿԱՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ, ֆաշիզմի դեմ ուղղված ժողովրդավար. շարժում 1920–ական թթ–ին: Միլիոնավոր մարդկանց միավորել է մեկ ընդհ. ձգտումով՝ պահպանելու խաղաղությունը և ժողովրդավարությունը ֆաշիզմի ու պատերազմի հրձիգների դեմ պայքարում:

ՀԱԿԱՖԵՌՈՄԱԳՆԻՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, բյուրեղ. նյութի մագնիսակարգավորված վիճակ, երբ *բյուրեղային ցանցի* հարևան հանգույցների ատոմների (իոնների) բոլոր կամ մի մասի մագնիս. մոմենտները կողմնորոշված են այնպես, որ ամբողջ նյութի մագնիսացածությունը 0 է:

ՀԱԿԱՖԵՌՈՄԱԳՆԻՍՆԵՐ, նյութեր, որոնք ունեն մասնիկների մագնիս. մոմենտների փոխադարձ ինքնակամ հակազուգահեռ (հանդիպական) կողմնորոշում՝ ***հակաֆերոմագնիսականություն***: Տիպային Հ. են քրոմը, մի շարք հազվագյուտ հողերի տարրեր և մոտ 1000 մետաղ. միացություններ ($Ni\,F_2$, $CoII_2$, F_eO ևն):

ՀԱՔԸՆԴԱՌԵՄ ՀԱՅՑ, հայցվորի դեմ դատարան ներկայացրած պատասխանողի ինքնուրույն պահանջը քաղաքաց. դատավարությունում: Հ. հ. քննարկվում է հայցի հետ և համարվում է հիմնական հայցից պաշտպանվելու միջոց:

ՀԱՃԻՆԹ, *Ապոլոնի* սիրելի պատանիներից հուն. դից–յան մեջ, որի մահացած մարմնից կամ արյունից Ապոլոնն ածցրել է հակինթ ծաղիկը:

ՀԱՃԻՆԹ (Hyacinthus), հակինթազգիների ընտանիքի բազմամյա սոխուկավոր բույսերի ցեղ: Հայտնի է մոտ 30 տեսակ՝ Արմ. և Միջին Ասիայում, Արլ. Միջերկրածովայքում: Ծաղկաբուծության մեջ օգտագործում են տարբեր ձևերի ու գույների ծաղիկներով արլ. Հ. (ունի 400–ից ավելի սորտեր): Լավագույն գեղազարդիչ բույսերից է:

ՀԱՃԻՆԹ, միներալ, *ցիրկոնի* մանգան պարունակող կարմրաշագանակագույն թափանցիկ տեսակը: Օգտագործվում է ոսկերչության մեջ:

ՀԱՆՈՎ, XVII դ–ի ճարտ.: 1695–ին Հին Կունեն գ–ում (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզի Կիրանց գ–ից արմ.) կառուցել է Սբ Աստվածածին եկեղեցին:

ՀԱՆՈՎ I (James, 1566–1625), Անգլիայի թագավոր՝ 1603–ից (1567–ից Շոտլանդիայի թագավոր՝ Հ. VI անվամբ): Անգլիայում 1–ին գահակալը՝ *Սթյուարտների* արքայատոհմից: Մարիա և Հենրի *Սթյուարտների* միակ որդին: Բացարձակ միապետության կողմնակից էր: Հ. I–ի օրոք սրվել են թագի և խորհրդարանի միջև հարաբերությունները:

ՀԱԿՈԲ II (1633–1701), Անգլիայի թագավոր՝ 1685–88-ին՝ *Ստյուարտների* արքայատոհմից: Փորձել է վերականգնել բացարձակապետությունը և նրա հենարան կաթոլիկ եկեղեցին: Գահընկեց է արվել 1688–89-ի պետ. հեղաշրջման հետևանքով (տես «*Փառահեղ հեղափոխություն*»):

ՀԱԿՈԲ Ա ԿԼԱՅԵՑԻ, Տարսոնացի, Սսեցի (1200-ական թթ.–1286), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1268-ից: Հայտնի է որպես գիտնական ու հոետոր, մեկնիչ ու բանաստեղծ: Նրա նախաձեռնությամբ 1240-ական թթ-ի սկզբին և 1254-ին Նիկիայում քաղ–միաբան. հաջող բանակցություններ են վարվել հույն պատրիարքներ Գերմանիկոս II-ի ու Մանվելի և Հովհաննես Վաղակես կայսեր հետ: Հ. Ա Կ. օծել է *Լևոն Գ*-ին և համագործակցել նրա հետ, նպաստել է հարևան իշխանությունների հետ խաղաղության պահպանմանը, հայեգիպտ. հաշտության (1282) կնքմանը:

ՀԱԿՈԲ Բ ԱՆԱՎԱՐՉԵՑԻ, Տարսոնացի, Սսեցի (1280-ական թթ.–1359), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1327–41-ին: Ընդդիմացել է Լևոն Ե-ի լատինամետ ձեռնարկումներին և հաջողության չհասնելով՝ 1341-ի սկզբին հրաժարվել է գահից, սակայն հաջորդի՝ *Մխիթար Ա Գոշեցու* մահից հետո կրկին ընտրվել է կաթողիկոս և հաջողությամբ գործակցել *Կոստանդին Դ*-ի հետ:

ՀԱԿՈԲ ԲԱՐ ՍԱԼԻԲԻ, Դիոնիսոս Բար Սալիբի (ծ. թ. անհտ–1171), ասորի մատենագիր, եկեղեց. գործիչ: Գրել է «Մեկնություն Հին կտակարանի», «Մեկնություն Նոր կտակարանի», «Գիրք ընդդեմ Հայոց» և այլ գործեր: Վերջինում քննադատել է Հայոց եկեղեցուն ու նրա վրա բարդել 35 մեղադրանք (դավանաբան., ծիս. ևն):

ՀԱԿՈԲ Գ ՍՍԵՑԻ (ծ. թ. անհտ–1411), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1404-ից: *Գրիգոր Տաթևացու* խորհրդով բանադրանքից ազատել է Աղթամարի կաթողիկոսությունը (1409) և ի չիք դարձրել նրա՝ Ամենայն հայոց կաթողիկոսություն դառնալու հավակնությունը: Իրեն հորջորջել է «կաթողիկոս ամենայն Հայազնեայց հանուրց և Վաղարշապատու»: Ենթադրվում է, որ նրան թունավորել են ընդդիմադիր միաբանները:

ՀԱԿՈԲ Գ ՋՈՒՂԱՅԵՑԻ (1598–1680), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1655-ից: Ավարտել է Սբ Էջմիածնի Մայր աթոռի վերակառուցումը: Կարգավորել է Հայ եկեղեցու մի շարք թեմերի պառակտված հարաբերությունները: Մեծապես նպաստել է հայկ. տպագրության զարգացմանը: 1677-ին Էջմիածնում հրավիրել է աշխարհիկ ու հոգևոր գործիչների խորհրդակցություն, ընտրել պատվիրակություն և ազատագր. առաքելությամբ ուղևորվել Եվրոպա: 1679-ի վերջին ժամանել է Կ. Պոլիս, որտեղ և մահացել է: Պատվիրակությունը, բացառությամբ Իսրայել Օրու, վերադարձել է:

ՀԱԿՈԲ Ե ՇԱՄԱԽԵՑԻ (XVII դ-ի վերջ–1763), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1759-ից (1755-ից՝ կաթողիկոս. տեղապահ), ազգ–ազատագր. շարժման գործիչ: 1743-ից կազմել է Գավազանագիրք: Նորոգել է երևանամերձ Զորագյուղի անապատը՝ դարձնելով «տուն հայրապետանիստ», կարգավորել Էջմիածնի վանքապատկան կալվածագրերը: Կոնդակ է հղել (20.07.1760) Ռուսաց կայսրուհի Ելիզավետա Պետրովնային՝ խնդրելով ընդառաջել Ս. Պետերբուրգ մեկնած Թեյմուրազ II-ին և օգնել հայ ու վրաց ժողդ-ներին՝ ազատագրվելու պարսկ. լծից:

ՀԱԿՈԲ ԵԴԵՍԱՑԻ, Աթանաս Բ (633–708), ասորի պատմագիր, մեկնիչ, փիլ.: Վերանայել է Հին կտակարանի ասոր. թարգմ-յունը («պեշշիտտո» – պարզ), գրել «Ժամանակագրություն» (մինչև 692-ի պատմությունը), «Վեցօրյա», «Ընդդեմ Քաղկեդոնի» երկերը: «Վեցօրյա»-ի Գ մասը («Աշխարհագրություն») կարևոր տեղեկություններ է պարունակում նաև Հայաստանի ու հայերի մասին:

ՀԱԿՈԲ ԹՈՒԽԱԹՑԻ (1563–1657–63-ի միջև), տաղասաց, թարգմանիչ, գրիչ: Հեղինակ է «Ողբ ի վերայ Օլախաց երկրին» (1595–96), «Տաղ եւ ողբանք ի վերայ Եւդոկիա քաղաքին» (1604) պատմ. թեմաներով ողբերի, նաև քնար. տաղերի, գանձերի, ներբողների, «Յակոբի Սաղմոսարան» անտիպ երկի (1627): Պահպանվել է Հ. Թ–ու գրչագրած 6 ձեռագիր. բացառիկ արժեք ունի «Գեղայի տաղարանը» (Մտնդ., ձեռ. № 10050): Լատ –ից թարգմանել է «Եօթն իմաստասիրաց պատմութիւն»-ը (1614, հրտ.՝ 1696):

ՀԱԿՈԲ ԿԱՐՆԵՑԻ, Գևորգի որդի (1618–մ. թ. անհտ), պատմիչ, ժամանակագիր, աշխարհագետ: 1641-ից՝ քհն.: Հեղինակ է «Ժամանակագրութիւն» (հրտ.՝ «Մանր ժամանակագրություններ», հ. 1, 2, 1951, 1956, ընդգրկում է 1482–1672-ին Հայաստանում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները), «Տեղագիր Վերին Հայոց» (հրտ.՝ 1903) երկերի: Ընդօրինակել է ձեռագրեր: Հ. Կ–ուն է վերագրվում «Երգ երգոցի» մի մեկնություն:

ՀԱԿՈԲ ՀԱՐՔԱՑԻ, Հակոբոս եպիսկոպոս, *Թոնդրակյան շարժման* առաջնորդ X դ–ի վերջ–XI դ. սկզբին: Ժխտել է Աստծու ու հավատացյալի միջև եկեղեցու և հոգևորականության միջնորդության անհրաժեշտությունը, քարոզել պարզ կենցաղավարություն: Կաթողիկոս *Սարգիս Ա Սևանցին* նրան կարգալուծել է, աղվեսադրոշմել ու բանտարկել: Վախճանվել է Նփրկերտում:

ՀԱԿՈԲ ՂՐԻՄԵՑԻ (1350-ական թթ.–1426), տոմարագետ, մանկավարժ: 1386-ից՝ Եկեղյաց գավառի Ավագ, ապա՝ Կապոսի վանքերի դպրոցների րաբունապետ, 1410-ից՝ *Մեծոփավանքի դպրոցի* դասապաց վրդ.: Դասավանդել է իմաստասիրություն, տոմարագիտ-յուն, գրչության արվ. և երաժշտություն: Կազմել է տոմարագիտական ձեռնարկ, տոմարի մասին իր տեսությունները հիմնավորել է Լուսնի փուլերի սեփ. դիտարկումներով: Շարունակել է *Դավիթ Անհաղթի* և *Հովհաննես Սարկավագի* ավանդույթները: Գրել է «Մեկնութիւն տոմարի», «Տոմարի արուեստի մասին» և այլ աշխ-ներ, մեկնաբանել Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» երկը: Հ. Ղ. երաժշտությունը դիտել է որպես գիտելիքի և արվ-ի ձև: Պահպանվել են Հ. Ղ–ու ընդօրինակած մի շարք ձեռագրեր (Մտնդ., ձեռ. № 178, 1716, 1365, 3487 ևն):

ՀԱԿՈԲ ՄԵՂԱՊԱՐՏ, հայկ. տպագրության հիմնադիրը, հայ 1-ին տպագրիչը: Գործել է XVI դ–ում Վենետիկում: 1512–13-ին իր տպարանում տպագրել է հայ. 6 գիրք, պահպանվել են 5-ը՝ Ուրբաթագիրք, Պատարագատետր, Աղթարք, Պարզատումար, Տաղարան. երկգույն են՝ սև ու կարմիր, ունեն զարդանախշեր, զարդեր, պատկերներ, զարդագրեր: Գրքերի վերջում Հ. Մ–ի տպարանահիշն է՝ խաչակիր շրջանակ՝ երկգիծ քառակուսու մեջ: Հ. Մ–ի տպագր. արվ–ի ավանդներն օգտագործել են *Արգար Թոխաթեցին*, *Սուլթանշահ Արգարյան Թոխաթեցին* և ուր., նաև ռուս 1-ին տպագրիչ *Իվան Ֆեոդորովը* և եվրոպացի տպագրիչներ:

«ՀԱԿՈԲ ՄԵՂԱՊԱՐՏ ՏՊԱԳՐԱՏՈՒՆ», ստեղծվել է 1948-ին Երևանում. մինչև 1962-ը՝ «Գրքերի տան տպարան», ապա՝ Երևանի Հակոբ Մեղապարտի անվ. պոլիգրաֆկոմբինատ, 1995-ից՝ «Հ. Մ. տ.»: Եղել է հանրապետության պոլիգրաֆարդ-յան առաջատարը: Տպագրել է «ՀՍՀ» հատորները, հայ և ռուս դասականների երկեր, արկած. և գիտահանրամատչելի գրկ., դասագրքեր, բառարաններ, գիտ. աշխ-ներ:

ՀԱԿՈԲ ՄԾԲՆԱՑԻ (ծ. թ. անհտ–338), ասորի եպս., ասոր. և հայկ. եկեղեցիների գործիչ: ՀԱԵ սուրբ: Որպես Մծբինի եպս.՝ մասնակցել է Նիկիայի I տիեզ. ժողովին: Առաջինն է փորձել բարձրանալ Արարատ լեռը Նոյյան տապանի հետքերը գտնելու համար: Ավանդույթ՝նրա հետ է կապում Նոյյան տապանի մասունքի հայտնվելը Սբ Էջմիածնում: 338-ին կազմակերպել է պարսից զորքերից պաշարված Մծբինի 70-օրյա պաշտպ-յուն: Հ. Մ–ու անունով կառուցվել են բազմաթիվ եկեղեցիներ (1-ինը՝ Մասիսի լանջին՝ Ակոռի գ–ի Սբ Հակոբ վանքը):

ՀԱԿՈԲ ՄՈՎՍԵՍ (Հակոբյան Մովսես Հակոբի, ծ. 1952), բանաստեղծ, թարգմանիչ, խմբ.: 1979–91-ին՝ *«Գարուն»* ամսագրի պատ. քարտուղար, խմբ–ի տեղակալ: 1991–96-ին՝ ՀՀ մշակույթի նախարար: Հեղինակ է «Ցնծության պահեր» (1984), «Գիրք ծաղկման» (1992), «Բանաստեղծություններ» (2005), «Լույս զվարթ» (2009), «Յոթներորդ որսորդություն» (2013) և այլ ժող-ների: Թարգմանել է Ռ. Մ. Ռիլկեի, Գ. Թրակլի, Ֆ. Նիցշեի, Թ. Մանի և ուր. գործերից:

ՀԱԵ և ՀԳՄ «Կանթեղ» (2005), ՀՀ Պետ. (2015) մրց-ներ, Ֆրիտյոֆ Նանսեն հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2000), ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2012):

ՀԱԿՈԲ ՆԵՏՐԱՐԵՑԻ, Հակոբ Արծկեցի (ծ. թ. անհտ–1501), գրիչ, բանաստեղծ: 1467-ին ձեռնադրվել է եպս.: Ընդօրինակել է Ավետարաններ (Մտնդ., ձեռ. № 8761, 1499, եղբորորդու՝ Զաքարիա դպիրի հետ), Գանձարաններ (Մտնդ., ձեռ. № 5438, 1491, եղբոր՝ Ղազարի հետ): Հեղինակ է գանձերի, տաղերի, երգերի, ոտանավորների, վարքերի, եղբոր՝ Ղազարի հիշատակին նվիրված ողբի:

ՀԱԿՈԲ ՋՈՒՂԱՅԵՑԻ, XVI դ–ի կես–XVII դ–ի սկզբի մանրանկարիչ: Վասպուրականի մանրանկարչության դպրոցի ներկայացուցիչ: 1605-ից աշխատել է Սպահանում: 1595–1610-ին Հ. Ջ–ու պատկերազարդած 8 ձեռագրում (4-ը՝ Մտնդ.) նկատելի են մանրանկարների զարդաձևերի հարստությունը, վառ, մաքուր գույները, մոնումենտալությունը:

ՀԱԿՈԲ ՍԱՆԱՀՆԵՑԻ, Հակոբոս Քարափնեցի (ծ. թ. անհտ–1085), ժամանակագիր, դավանաբան: Եռանդուն մասնակցություն է ունեցել հայ-հուն. եկեղեց. բանակցություններին և դավանաբան. վեճերին: Հ. Ս–ու «Ժամանակագրություն»-ից մեզ են հասել փոքր հատվածներ («Ի ժամանակագրութենէ Յակոբայ քահանայի», Մտնդ. ձեռ. № 9832), որն օգտագործել է *Մատ–*

թևոս Ուռհայեցին իր «Ժամանակագրության» մեջ՝ 1085–ին նախորդող դեպքերի նկարագրության համար:

ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳ (Տեր–Ղևոնդյան Հակոբ, 1840–1890), ազգ–ազատագր. շարժման գործիչ: Կարինի «Հայ հեղափոխական ընկերություն» կազմ–յան (1884) հիմնադիրներից: Գործակցել է ***Արաքոյի*** հետ: Տարոնի հայության վիճակի վերաբերյալ թուրք. կառ–յանն ուղղած դիմումների համար բանտարկվել է: Առաջարկում էր մերձենալ քրդերի հետ և միացյալ ապստամբել: Սպանել է Սարգիս ***Գունդյանը***:

ՀԱԿՈԲ ՍԱՐՈՒԽԳԵՅԻ, Հակոբ Սրճեցի, Հակոբ Արծուպայի եպիսկոպոս (451–521), ասորի մատենագիր, բանաստեղծ, եկեղեց. գործիչ: Հեղինակ է ճառերի, նամակների, բանաստեղծությունների (հիմնականում՝ կրոն. բովանդակությամբ): Հ. Ս–ու ճառերի մեծ մասը թարգմանվել է հայ.:

ՀԱԿՈԲ ՏՅԱՌՆԵՂԲԱՅՐ, Հիսուս Քրիստոսի եղբայրը (հավանաբար՝ Հովսեփի որդին՝ 1–ին ամուսնությունից), 70 առաքյալներից, Երուսաղեմի 1–ին եպս–ը, որը գլխավորել է համայնքը Հիսուսի ***Համբարձումից*** հետո: Մահապատժի է ենթարկվել մոտ 62–ին:

ՀԱԿՈԲ ՔՈՆԵՑԻ, Հակոբ Թարգման, XIV դ–ի 1–ին կեսի թարգմանիչ, ունիթոր. շարժման գործիչ, Քոնայի հայ–դոմինիկ. միաբանության անդամ: Հայ. է թարգմանել Ժիլբեր Պոռետացու, Ալբերտ Մեծի, Թովմա Աքվինացու և ուր. աշխ–ներից: Հ. Ք–ու գործունեության շնորհիվ խորացել են հայ–արևմտաեվրոպ. գր. կապերը:

ՀԱԿՈԲՎՎԱՆՔ, Մեծառանից Սուրբ Հակոբա վանք, ճարտ. համալիր Արցախ նահանգ–ի Մեծառանք գվո–ում (այժմ՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանի Քոլատակ գ–ից 1,5 *կմ* հս): Եղել է ուխտատեղի, կրթության և գրչության կենտրոն: Պահպանված ամենահին արձանագրությունը 853 թ–ից է: Կառույցների մեծ մասն ստեղծվել է XII–XIII դդ–ում: Պարսպապատ համալիրում 2 միանավ եկեղեցիներ են, 2 գավիթ, բնակելի և տնտ. շինություններ:

ՀԱԿՈԲ–ԳՐԻԳՈՐ (Ճրճրյան Հակոբ Գրիգորի, 1905–1985), թարգմանիչ, հրապարակագիր: Հայ. է թարգմանել Է. Պոյի, Յ. Վ. Գյոթեի գործերից, Ա. Էյնշտեյնի 2 աշխ., գերմ.՝ Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբարը» և «Մեծապատիվ մուրացկանները» (1971): Հեղինակ է «Եթովպիա: Հայ եկեղեցին եւ հայերը» (1927), «Համազգային ուղղագրութեան եւ հայերէնի մաքրագործման հարցերը: Պարոյր Սեւակի լեզուական կտակը» (1977), «Ծանոթ և անծանոթ հայեր. Նոյից մինչև մեր օրերը» (ֆրանս., 1974) գրքույկների, հրապարակախոս., հայագիտ. հոդվածների:

ՀԱԿՈԲԻԿՅԱՆ ԵԿԵՂԵՑԻ, Ասորոց միաբնակ եկեղեցու ավանդապահ թևի անվանումը: Առաջացել է 560–570–ական թթ–ին՝ Ասորոց եկեղեցու երկփեղկման հետևանքով: 1–ին մասը, Անտիոքի Պողոս պատրիարքի անունով, կոչվել է Պողոսյան եկեղեցի, 2–րդը՝ Եղեսիայի եպս. Հակոբ Բարադեոսի անունով՝ Հ. ե.: 1–ինի հետևորդները կողմ էին քաղկեդոնականությանը զիջումներ անելուն, հակոբիկյաններն անզիջում դիրք էին բռնել:

ՀԱԿՈԲԿՈՒԽՅԱՆ Իսրայել Հակոբի (ծ. 1960), բռնցքամարտիկ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1989): Աշխարհի (1989), Եվրոպայի (1985, 1989, 1991), ԽՍՀՄ վեցակի չեմպիոն, աշխարհի գավաթակիր (1985), «Բարի կամքի խաղեր» համաշխ. մրցումների (1986, 1990), ԽՍՀՄ ժողդ–ների սպարտակիադայի (1979, 1983) հաղթող:

ՀԱԿՈԲՅԱՆ Ալեքսան Հակոբի (ծ. 1955), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (2014): Աշխ–ները վերաբերում են Բուն Աղվանքի պատմությանը և հայկ .մատենագիտությանը: Հիմն. երկը՝ «Պատմա–աշխարհագրական վիմագրագիտական հետազոտութիւններ (Ուտիք եւ Արցախ)» (2009):

ՀԱԿՈԲՅԱՆ Ալեքսանդր Արշակի (1890–1971), մեխանիկոս: ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1943), պրոֆ. (1937): ՀԽՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1940): Աշխ–ները վերաբերում են հեղուկից և կամայական թվով գազերից բաղկացած խառնուրդների թերմոդինամիկ. հատկություններին: Հիմնավորել է թերմոդինամիկայի 2–րդ օրենքը բոլոր ջերմաստիճանների դեպքում:

ՀԱԿՈԲՅԱՆ Ալեքսանդր Խաչատուրի (ծ. 1951), գյուղատնտես: Գղտ. գիտ. դ–ր (2012): ՀԱԱՀ–ի Վանաձորի մասնաճյուղի տնօրեն (2005–ից): Աշխ–ները վերաբերում են ընդհ. երկրագործության, հողագիտ–յան և ագրոքիմիայի հարցերին:

ՀԱԱՀ «Ոսկե հասկ» մրց. (2013), ՀԱԱՀ ոսկե (2011), ՀՀ ԳՆ ոսկե (2014) մեդալներ:

ՀԱԿՈԲՅԱՆ Ալեքսանդր Մկրտչի (1904–1987), քիմիկոս–օրգանիկ: Քիմ. գիտ. դ–ր (1971): Լևոն ***Հակոբյանի*** հայրը: Աշխ–ները վերաբերում են ացետիլենի քիմիային: Միա– և երկվինիլացետիլենների քլորածանցյալների սինթեզով ստացել է նոր մոնոմեր. և պոլիմեր. նյութեր:

ՀԱԿՈԲՅԱՆ Անդրեյ Ստեփանի (1958–2013), պլաստիկ վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1994): 1994–2013–ին՝ Վերարտադր–յան կենտրոնի գլխ. տնօրեն (Մոսկվա): Աշխ–ները վերաբերում են սեռի զարգացման, ձևավորման և տարբերակման, բջջ. վիրաբուժության, վիրահատ. գինեկոլոգիայի խնդիրներին, սեռ. օրգանների զարգացման արատներին, անպտղության և սեռ. անկարողության բուժման մեթոդների մշակմանը: «Տարվա մարդ» (1999):

ՀԱԿՈԲՅԱՆ Անժիկ Մուշեղի (1929–2009), լրագրող, խմբ., թարգմանիչ, արձակագիր: ՀԽՍՀ վաստ. ժուռնալիստ (1982): 1976–86–ին՝ «***Գարուն***»–ի, 1986–88–ին՝ «***Գրական թերթ***»–ի գլխ. խմբ.: Հեղինակ է «Քուլալ առվակի պես» (1971) պատմվածքների ժող–ի, «Հիրիկը քարափների մեջ» (1987) վիպակի: Թարգմանել է ռուս–ից:

ՀԱԿՈԲՅԱՆ Արամ, ***Պզտիկ Արամ*** (1883–1921), հայ ազգ–ազատագր. շարժման գործիչ, ֆիդայի: Մասնակցել է Սասունի 1904–ի ապստամբությանը, նաև Իրան. 1905–11–ի հեղ–յանը, 1915–ի Սասունի ինքնապաշտպանությանը: 1912–15–ին գործել է Սուշում: Աչքի է ընկել 1918–ի Մայիսյան հերոսամարտերում, մասնակցել 1920–ի թուրք–հայկ. պատերազմին, 1921–ի Փետր. հակախորհրդ. ապստամբությանը:

ՀԱԿՈԲՅԱՆ Արամ Էդուարդի (ծ. 1964), սեռախտաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1998), պրոֆ. (2000): ՀՀ գլխ. սեռախտաբան (2016–ից): Աշխ–ները վերաբերում են սեռ. առողջության, դրա խանգարման պատճառների, զարգացման պայմանների, ախտորոշման, բուժման, կանխարգելման հարցերին:

ՀԱԿՈԲՅԱՆ Արամ Սերգեյի (ծ. 1951), վիրաբույժ–կոլոպրոկտոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (2000), պրոֆ. (2002): Աշխ–ները վերաբերում են հարօջախային բորբոքմամբ բարդացած խթաղու քաղցկեղի ախտորոշմանն ու բուժմանը: Առաջարկել է տեղային հակաբակտեր. բուժում՝ նախավիրահատ. փուլում:

ՀԱԿՈԲՅԱՆ Արարատ Մխիթարի (ծ. 1947), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1998), պրոֆ. (2000): Աշխ–ները վերաբերում են ՀՀ (1918–20) պատմությանը, հայ քաղ. կուս–յունների գործունեությանը:

ՀԱԿՈԲՅԱՆ Արթուր Հրաչյայի (ծ. 1961), մարմնամարզիկ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1982): Սպորտ. մարմնամարզության աշխարհի թիմ. առաջնության հաղթող (1979, 1981) և հենացատկի չեմպիոն (1983): Աշխարհի բազմամարտի առաջնության բրոնզե մեդալներ (1983), ԽՍՀՄ (1981, 1983) և ԽՍՀՄ ժողդ–ների 7–րդ սպարտակիադայի (1983) չեմպիոն:

ՀԱԿՈԲՅԱՆ Արման Պարգևի (ծ. 1976), նյարդավիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (2014): 2015–ից՝ «Նաիրի» ԲԿ Ողնաշարի վիրաբուժության և էնդոսկոպիկ նյարդավիրաբուժության կենտրոնի ղեկ–ը: Աշխ–ները վերաբերում են միջճողային աճառների ճողվածքների, ողնաշարի նորագոյացությունների կամ կոտրվածքների, հիպոֆիզ. շրջանի և գլխուղեղի ուռուցքների, արյունահոս. արյունազեղումների վիրահաբուժ. բուժմանը: Տարվա լավագույն զինվ. բժիշկ (2014):

ՀԱԿՈԲՅԱՆ Արմեն Աշմատի (ծ. 1976), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (2012): Աշխ–ները վերաբերում են ֆին. և կառավարչ. հաշվառման, ֆինանսների, բանկերի և ֆին. շուկաների, լիզինգի ու աուդիտի հարցերին:

ՀԱԿՈԲՅԱՆ Արշակ Հայրապետի (1886–1960), ֆիզիոլոգ, ֆիզիոթերապևտ: Բժշկ. գիտ. դ–ր (1936), պրոֆ. (1939): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ: ԵՊՀ բժշկ. ֆակ–ի հիմնադիրներից: Զբաղվել է նաև կուրորտաբանության հարցերով, նպաստել «Արզնի», «Ջերմուկ» և Վանաձորի առողջարանների ստեղծմանը:

ՀԱԿՈԲՅԱՆ Արշավիր Մնացականի (1908–1993), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1954), պրոֆ. (1960): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (1967): Աշխ–ները վերաբերում են Խորհրդ. Հայաստանի պատմությանը: Մասնակցել է «Հայ ժողովրդի պատմություն» (հ. 7, 8, 1967, 1970) բազմահատորյակի ստեղծմանը:

ՀԱԿՈԲՅԱՆ Արտավազդ Արմենակի (1903–1973), ճարտարագետ–էլեկտրիկ: Տեխ. գիտ. թեկնածու (1938): Աշխ–ները վերաբերում են փոփոխ. հոսանքի բարձր լարման էլեկտրասարքավորումների ստեղծման, ստատիկ էլեկտրականությունից և ամպրոպներից շենքերի ու կառույցների պաշտպ–յան հարցերին: Լենինյան մրց. (1962):

ՀԱԿՈԲՅԱՆ Գագիկ Վարդգեսի (ծ. 1961), վիրաբույժ–ստոմատոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (2008), պրոֆ. (2011): Աշխ–ները վերաբերում են ստոմատոլոգ. իմպլանտոլոգիայի, վիրաբուժ. ստոմատոլոգիայի պրոպեդևտիկայի խնդիրներին:

ՀԱԿՈԲՅԱՆ Գորիկ Գուրգենի (ծ. 1946), ԱԱԾ գեն–գնդ. (2009): 1997–99–ին՝ ՆԳ և ԱԱ, 1999–2002–ին՝ ԱԱ նախարարի տեղակալ, 2002–04–ին՝ ՀՀ Կառ–յանն առընթեր ԱԱ ծառայության փոխնախագահ, 2004–16–ին՝ տնօրեն:

ՀՀ «Մարտական խաչ» 2–րդ աստիճանի (2011), «Սբ Վարդան Սամիկոնյան» (2016)

շքանշաններ, ՀՀ վարչապետի հուշամեդալ (2006):

ՀԱԿՈԲՅԱՆ Գրիգոր Արշակի (1907–1981), գրականագետ, բնագրագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1969), պրոֆ. (1978): Հեղինակ է «Ներսես Շնորհալի» (1964), «Ներսես Լամբրոնացի» (1971), «Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը» (1974), «Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (V–XV դդ.)» (1980), «Արևմտահայ նորավեպը (1880–1910-ական թթ. ժանրի պատմությունն և տեսություն)» (1996) և այլ աշխ–ների: Կազմել և հրտ–յան է պատրաստել «Ներսես Շնորհալի» (1969) բնագրերի ժող–ը: Անհիմն բռնադատվել է, հետագայում՝ արդարացվել:

ՀԱԿՈԲՅԱՆ Գրիգոր Ջանիբեկի (1958–2005), գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1996): Հեղինակ է «Թերթոն վեպի տեսությունը. Երվանդ Օտյան» (2002), «Հայ դասական նորավեպ (XIX–XX դդ. արևմտահայ նովելի նմուշներ)» (2007) աշխ–ների: Հ–ի աշխատասիրությամբ լույս են տեսել Հակոբ Օշականի, Երվանդ Օտյանի, Զապել և Հրանտ Ասատուրների գործերից:

ՀԱԿՈԲՅԱՆ Գուրգեն Ալեքսանդրի (1907–1977), դերասան: ՀԽՍՀ ժող. արտիստ (1967): 1925–28-ին և 1959-ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի, 1928–41-ին՝ Լենինականի դրամատիկ., ապա՝ Վորոնեժի, Բրյանսկի և այլ ռուս. թատրոնների դերասան (Սուրաթով՝ Սունդուկյանի «Էլի մեկ զոհ», Սյուշ՝ Պանյոլի «Տոպազ», ևն): Նկարահանվել է կինոյում («Ճանապարհ», 1961, «Կամոյի վերջին սխրանքը», 1973, երկուսն էլ՝ Հայֆիլմ):

ՀԱԿՈԲՅԱՆ Գևորգ Մնացականի (1917–1996), դերասան: ՀՀ ժող. արտիստ (1985): 1934–52-ին՝ Լենինականի թատրոնին կից՝ Պատանի հանդիսատեսի, Արթիկի, Ալավերդու, 1953–87-ին՝ Կամոյի թատրոնների դերասան (Օսեփ՝ Գ. Սունդուկյանի «Քանդած օջախ», Բրոուդի՝ Ա. Կրոնինի «Բրոուդիի ամրոցը», Էլիզբարյան՝ Շիրվանզադեի «Պատվի համար», ևն):

ՀԱԿՈԲՅԱՆ Դավիթ Վարազդատի (ծ. 1957), դերասան, ռեժ.: ՀՀ վաստ. արտիստ (2008): Պրոֆ. (2013): 1980–89-ին՝ Երևանի Հ. Սպյանի անվ. թատրոն–ստուդիայի, 1992-ից՝ Համազգ. թատրոնի դերասան և ռեժ. (2000–03-ին՝ նաև տնօրեն), 1992–94-ին՝ «Եռանկյունի» թատրոն–ստուդիայի հիմնադիր–ղեկ., 2003–06-ին՝ Բեյրութի «Գասպար Իփեկյան» և «Արեգ» թատերախմբերի գեղ. ղեկ., 2006–14-ին՝ ԵԵԿՄԹ գեղ. ղեկ. և տնօրեն: Բեմադրել է Ա. Պ. Չեխովի «Քեռի Վանյա» (1986), Մ. Խերանյանի «Շխոնց Միհրան» (2002) և այլ գործեր: ՀԹԳՄ «Արտավազդ» մրց. (2013):

ՀԱԿՈԲՅԱՆ Ելենա Սուրենի (ծ. 1961), մանկավարժ: Մանկավարժ. գիտ. դ–ր (2015), պրոֆ. (2016): Աշխ–ները վերաբերում են բնակչության ֆիզ. դաստիարակության, առողջ ապրելակերպի, առողջարար. ֆիզկուլտուրայի խնդիրներին:

ՀԱԿՈԲՅԱՆ Էդուարդ Բարկենի (1946–1999), պրոկտոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (1993), պրոֆ. (1994): Աշխ–ները վերաբերում են ուղիղ աղիի և շեքի ոչ ուռուցք. հիվանդությունների բուժման ու ախտորոշման խնդիրներին:

ՀԱԿՈԲՅԱՆ Թադևոս Խաչատուրի (1917–1989), պատմաբան–աշխարհագետ: Պատմ. գիտ. դ–ր (1962), պրոֆ. (1963): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1968): Աշխ–ները վերաբերում են Հայաստանի պատմ. աշխարհագրությանը: Համահեղինակ է «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» (հ. 1–5, 1986–2001): ՀՀ նախագահի մրց. (2003):

ՀԱԿՈԲՅԱՆ Թադևոս Նիկոլայի (ծ. 1946), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դ–ր (1990): Ուսումնասիրել է բջջում սպիտակուցների և պեպտիդային հորմոնների սինթեզի և քայքայման մեխանիզմները, քաղցկեղածին սպիտակուցների ակտիվացման պատճառները: Հայտնաբերել է նոր դեղարան. թիրախներ և հետազոտել դրանց կենսաքիմ. հատկությունները: 1991-ից՝ արտերկրում:

ՀԱԿՈԲՅԱՆ Ժակ Ստեփանի (ծ. 1917), բանաստեղծ: 1968-ից՝ Փասադենայում (ԱՄՆ): Հեղինակ է «Գաղտնի ճամբան» (1938), «Մեսրոպաշունչ» (1947), «Մասիսածին» (1963), «Հայատրոփ» (1970), «Ուլունքաշար» (1983), «Հոգին հայկական: Հայատրոփ ու հայրենատրոփ քերթուածներ» (1987), «Մեսրոպատրոփ» (1993), «Մեսրոպավեպ» (2007) և այլ բանաստեղծությունների ժող–ների, «Հարսնագնաց երամ» (1996) պոեմի, «Լիլոյշ ա տոչոր…» (2010) և այլ գործերի, նաև կրոն., աստվածաբան. երկերի:

ՀԱԿՈԲՅԱՆ Ժան Իշխանի (ծ. 1936), կենսաքիմիկոս, ֆերմենտաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1971), պրոֆ. (1986): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2015): ՀՀ ԳԱԱ ՓԿԻ տնօրեն (1974–79): Միջազգ. գիտակրթ. կենտրոնի (1996–2000), ՀՀ ԳԱԱ մանրէաբանության ինստ–ի (2000–14) տնօրեն: Աշխ–ները վերաբերում են մոլ. կենսբ–յան, ֆերմենտների կենսատեխնոլոգիայի, գործառնության և կառուցվածքի հարցերին: ՀՀ–ում առաջինն է նկարագրել ֆերմենտների փոխակերպման երևույթը: Նրա ղեկավարությամբ վերծանվել է կմախքային մկանների որոշ ֆերմենտների կատալիզային ակտիվ կենտրոնների կառուցվածքը: Փարիզի միջազգ. «Արարատ» ակադ–ի (1993), ՀՃԱ (1996) անդամ:

ՀԱԿՈԲՅԱՆ Ժանետա Անդրանիկի (ծ. 1952), բուսաբան: Կենսբ. գիտ. դ–ր (2013): Աշխ–ները վերաբերում են բույսերի ձևաբանությանը, կարգաբանությանը, էկոլոգիային, Հայաստանի ֆլորայի վայրի տեսակների մշակության, բնապահպանության և այլ հարցերի: Մասնակցել է ՀՀ «Կարմիր գրքի» (2010) պատրաստմանը:

ՀԱԿՈԲՅԱՆ Ժիրայր Գրիգորի (1905–1968), դրամատուրգ, թատերագետ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1962): 1938–44-ին՝ ԵՌԹ, 1944–47-ին՝ Հայֆիլմի, 1960–64-ին՝ Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի տնօրեն: Հեղինակ է «Ռուզաննա Վարդանյան» (1957), «Ավետ Ավետիսյան» (1958) գրքերի, նաև կինոսցենարների, պիեսների:

ՀԱԿՈԲՅԱՆ Ժորժ (Գևորգ, 1912–1971), գեղանկարիչ: 1920-ից՝ Փարիզում: Հեղինակ է հիմնականում խճանկարների, հաստոց. գեղանկարչ. («Ալպ–Մարիթեն», «Լուարի ափերը» ևն), գրաֆիկ. գործերի, որոնց երփնագրային լուծումները հիշեցնում են ուշ իմպրեսիոնիստ. պուանտիլիստ. ոճը: Հ–ի գործերից պահվում են ՀԱՊ–ում:

ՀԱԿՈԲՅԱՆ Իոսիֆ (Հովսեփ) Գրիգորի (ծ. 1931), ռազմ. և հրթիռ. տեխնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1988), պրոֆ. (1990): Աշխ–ները վերաբերում են ինքնաշանառման ռադիոտեղորոշիչ մարտագլխիկների և հրթիռների կառավարման բազմաֆունկցիոնալ բլոկների մշակմանն ու նախագծմանը: Լենինյան (1972), ԽՍՀՄ Պետ. (1980) մրց–ներ: ՌԴ Էլեկտրատեխ. (1994), Միջազգ. տեղեկագիտ–յան (1995) ակադ–ների անդամ:

ՀԱԿՈԲՅԱՆ Լեոնիդ Սամսոնի (1936–2002), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1984), պրոֆ. (1990): ՀՃԱ (1996), ՀՀ ԳԱ թղթ. (2000) անդամ: Եղել է ՀՀ տարածք. կառավարման և քաղաքաշին–յան նախարար (2000–01): Աշխ–ները վերաբերում են աշխ–ի մեքենայացման, ավտոմատացման և բարձր տեխնոլոգիաների ներդրման խնդիրներին:

ՀԱԿՈԲՅԱՆ Լևոն Ալեքսանդրի (1938–1999), քիմիկոս: Քիմ. գիտ. դ–ր (1980), պրոֆ. (1985): ՀՀ–ում գազաֆազ ռեակցիաներն էՊՌ եղանակով ուսումնասիրման նախաձեռնողներից: Ալեքսանդր *Հակոբյանի* որդին: Աշխ–ները վերաբերում են մետաղակոմպլեքս. կատալիզորդների ներկայությամբ ացետիլեն. միացությունների փոխարկումներին: Հայտնաբերել է բազմազուգորդված համակարգի ազդեցությամբ ֆունկցիոնալ խմբերի արտակարգ ակտիվացման երևույթը:

ՀԱԿՈԲՅԱՆ Խորեն Ջավենի (ծ. 1945), գեղանկարիչ: 1971–92-ին՝ հայկ. հեռուստատեսության բեմադրող նկարիչ, «Գարուն» ամսագրի գեղ. խմբ., «Արևիկ» մանկ. հրտչ–յան գլխ. նկարիչ: Պատկերազարդել է «Ինչ է, ով է» մանկ. քառահատոր հանրագիտարանի հայկ. նյութերը (1985–87), «Սասնա ծռեր» էպոսի և հայոց պատմությանը նվիրված գրքերի շարք (1994–98), Հ. Թումանյանի «Հեքիաթներ» (2002), Ս. Հարությունյանի «Հայ հին վիպաշխարհը» (2004) և այլ գրքեր:

ՀԱԿՈԲՅԱՆ Կարապետ Հակոբի (1849–1926), հաս–քաղ. գործիչ, հրապարակախոս: Հայկ. հարցն արծարծելու նպատակով 1885-ին Լոնդոնում Հ–ի ղեկավարությամբ ստեղծվել է «Հայրենասիրաց ընկերություն հայոց Եվրոպայի» հանձնաժողովը: Մասնակցել է «Հայաստան» (Լոնդոն) թերթի հրտ–յանը: ԱՀՊ–ի նախօրեին *Հայկական հարցի* վերարծարծման խնդրով դիմել է Մեծ Բրիտանիայի Կառ–յանը. արդյունքում ստեղծվել է Բրիտանա–հայկ. հանձնաժողով:

ՀԱԿՈԲՅԱՆ Կոստանդին Հարությունի (1901–1974), անասնաբույծ–ընտրասեռումնաբան: Գղտ. գիտ. դ–ր (1956), պրոֆ. (1957): ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1960): Աշխ–ները վերաբերում են մսատու տավարաբուծության զարգացման հարցերին: Ղազախ. սպիտակագլուխ տավարի ցեղի ստեղծման հեղինակներից է:

ՀԱԿՈԲՅԱՆ Կոլյուն Հարությունի (1908–1994), ճարտ.: ԽՍՀՄ ժող. ճարտ. (1980): Հ–ի նախագծերով Երևանում կառուցվել են «Դինամո» (այժմ՝ «Հանրապետական», 1948), «Հրազդան» (1971, Գուրգեն Մուշեղյանի, Էդվարդ Թոսունյանի հետ) մարզադաշտերը, բնակելի տներ (1947–49), դպրոց (1949), հիվանդանոց (1963), «Դինամո» մարզասրահը (1965, Ն. Ալավերդյանի հետ), Մարզահամերգ. համալիրը (1984, Արթուր *Թարխանյանի*, Սպարտակ Խաչիկյանի, Գուրգեն Մուշեղյանի և ուր. հետ):

ՀՀ (1979), ԽՍՀՄ (1987) Պետ. մրց–ներ:

ՀԱԿՈԲՅԱՆ Հակոբ Երվանդի (1912–1971), քիմիկոս: Տեխ. գիտ. դ–ր (1959), պրոֆ. (1962): Աշխ–ները վերաբերում են մոնո–

մերների սինթեզին, պոլիմերման տեխնոլոգիայի մշակմանը, վինիլացետատի պոլիմերմանը, պոլիվինիլսպիրտից սինթետիկ մանրաթելի, մեթիլացետատից՝ մեթիլսպիրտի և քացախաթթվի ստացմանը:

ՀԱԿՈԲՅԱՆ Հակոբ Հմայակի (1917–1985), բանասեր, թարգմանիչ, գյոթեագետ: Վայմարյան ընկ-յան անդամ (1978): Հեղինակ է «Միջօրե» (1958) բանաստեղծությունների ժող-ի: Թարգմանել է Գ. Լեսինգի, Յ. Պ. Էքերմանի, Ֆ. Շիլլերի, Յ. Վ. Գյոթեի գործերից, նաև «Գերմանական նորավեպ (XIX դար)» (1954) ժող-ը:

ՀԱԿՈԲՅԱՆ Հակոբ Մնացականի (1866–1937), բանաստեղծ, խմբ.: Հայաստանի և Վրաստանի ժող. բանաստեղծ (1923): 1914-ին՝ «Կարմիր մեխակներ», «Բանուրի ալբոմ» ալմանախների, «Դարբնոց» ամսագրի խմբ-հրտ.: Հեղինակ է «Աշխատանքի երգեր» (1906), «Նոր առաւօտ» (1910), «Կարմիր ալիք» (1921), «Վոլխովստրոյ» (1935) և այլ բանաստեղծությունների ու պոեմների ժող-ների:

ՀԱԿՈԲՅԱՆ Հակոբ Վահանի (1927–2009), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (2002), պրոֆ. (2007): 1969–75-ին եղել է Հայկ. հանրագիտարանի պատ. քարտուղար: Աշխ-ները վերաբերում են Հայ դատին ու Հայոց ցեղասպանության միջազգ. իրավ. հարցերին, հայրենադարձության պատմության ու իրավ. հիմքերին:

ՀԱԿՈԲՅԱՆ Հակոբ Տիգրանի (1923–2013), գեղանկարիչ: ՀԽՍՀ ժող. նկարիչ (1977): ԽՍՀՄ (1991-ից՝ ՌԴ) Գեղարվ-ի ակադ-ի թղթ. անդամ (1988): 1962-ին ընտանիքով հայրենադարձել է: Հեղինակ է նատյուրմորտների («Կինը խոհանոցում», 1959, «Վիշտ», «Սխտորներ», երկուսն էլ՝ 1961), ինչպես գույներով քնար. բնանկարների («Գարուն», 1969, «Անդորր», 1970, ևն): Հ-ի տազնապներն ընդգծված են «Նեյտրոնային ռումբին՝ ոչ» (1977–78), «Սումգայիթ» (1989) կտավներում, «Ընտանիք» (1989, Արագածի բարձունքին) քանդակում, «Հանրապետության հրապարակ» (2001), «Վիրուսներ» (2003), «Դեր Զորում զոհված մեծ հորս՝ Սարգիս Եսայանի հիշատակին» (2004) և այլ գործերում:

ՀԽՍՀ (1977), ԽՍՀՄ (1985) Պետ., «Հայաստան» համահայկ. հիմնադրամի (1994), ՀՀ նախագահի (2013, հետմահու) մրց-ներ, ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (1996), ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» (2003) շքանշաններ: Երևանի պատվ. քաղաքացի (2001):

ՀԱԿՈԲՅԱՆ Հարություն Հմայակի (1918–2005), աճպարար: ԽՍՀՄ ժող. արտիստ (1982): Հմայակ ***Հակոբյանի*** հայրը: 1965-ից՝ Սոսհամերգի արտիստ: Հեղինակ է «50 հետաքրքրաշարժ աճպարարություն» (1964), «Ամեն ինչ աճպարարության մասին» (1971), «Հրաշքների աշխարհ» (1980, երեքն էլ՝ ռուս.) գրքերի: 1-ին (1957, Կոլոմբո, Շրի Լանկա), Մեծ (1959, Փարիզ), Բոսկոյի անվ. (1974, Գերմանիա), Հատուկ (1977, Կաոլովի Վարի) մրց-ներ, Ռ. Գուդենի (1959, Փարիզ), Վ. Դուրովի (1974, Գերմանիա) անվ. մեդալներ ևն:

ՀԱԿՈԲՅԱՆ Հարություն Վլադիմիրի (ծ. 1962), նկարիչ: Հեղինակ է գեղանկարչ. գործերի («Մեր բակը», 2006, «Սկերցո 1», «Սկերցո 3», երկուսն էլ՝ 2004, «Մեղեդի», «Հանդիպում», «Հիշողություն», «Ծաղիկներ», բոլորը՝ 2015, ևն), բնանկարների («Ալեկոծված Սևանը», 2014, «Սևանն անձրևից հետո», «Արշալույս», երկուսն էլ՝ 2015, ևն): Զևավորել է ամսագրեր, գրքեր, ֆիլմեր («Սահման», 2008, ևն), նաև Արու–Դաբիի հայկ. Սրբոց Նահատակաց եկեղեցու ինտերիերը (սրբապատկերներ, խորան):

ՀԱԿՈԲՅԱՆ Հմայակ Հարությունի (ծ. 1956), աճպարար, էստրադայի, կինոյի, կրկեսի դերասան: ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1977): Հարություն ***Հակոբյանի*** որդին: Ինքնատիպ համարներով հանդես է եկել բազմաթիվ երկրներում: Նկարահանվել է կինոյում («Գեղեցիկ տղամարդը», 1978, «Բուդուլայի վերադարձը», 1985, «Օրենքով գողեր», 1988, «Կատաղի ավտոբուս», 1991, ևն): Միջազգ. (5) և պլաստիկայի համար հատուկ մրց-ներ:

ՀԱԿՈԲՅԱՆ Հմայակ Ստեփանի (1871–1939), գեղանկարիչ: Հեղինակ է գյուղ. թեմայով բնանկարների («Վար Արագածի լանջին», 1910–20, «Հովիվը», 1910-ական թթ., ևն), դիմանկարների («Կաթողիկոս Խրիմյան», «Մովսես Խորենացի», երկուսն էլ՝ 1900–10, ևն), նատյուրմորտների («Բանջարեղեն», «Մրգեր», երկուսն էլ՝ 1901, ևն), քաղաք. պատկերների («Հին Թիֆլիս», 1888, ևն), հայ գեղջուկների, արհեստավորների զուտնեղ կերպարների («Հայ գյուղացին», 1917, «Ոսկերիչ Ալեքոն», 1895–98, ևն), թեմատիկ կոմպոզիցիաների, ինքնանկարների:

ՀԱԿՈԲՅԱՆ Հովհաննես Հակոբի, **Վարդ Շահենի** (1876–1937), պատմաբան, հրապարակախոս, գրող: Պրոֆ. (1928): ՀԽՍՀ պատմության և գրկ-յան ինստ-ի իսկական անդամ (1935): 1907-ին Նյու Յորքում հրատարակել է ***«Արաքս»*** ամսագիրը: 1908-ից՝ «Նյու Յորք Իվնինգ Փոստ» թերթի թղթակիցը Թուրքիայում, 1912-ին՝ Կարինի Սանասարյան վարժարանի տեսուչ, 1922–27-ին՝ ***«Արեւ»*** (Կահիրե) օրաթերթի խմբագրապետ: Աշխ-ները վերաբերում են Հայաստանի, Այսրկովկասի և Մերձ. Արևելքի մասին եվրոպացի ճանապարհորդների ուղեգրություններին, ինչպես նաև Գերմանիայի նվաճող. քաղ-յանը Այսրկովկասում: Կազմել է «Ուղեգրություններ» շարքի Ա և Զ (1932, 1934) հատորները: Անհիմն բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ՀԱԿՈԲՅԱՆ Հովհաննես Համազասպի (1914–1990), ճարտ.: ՀԽՍՀ վաստ. ճարտ. (1964): Զափագրել է Թալինի Կաթողիկե և Ներսեհ Կամսարականի եկեղեցիները (1935–37), Օձունի հուշարձանախումբը (1936), Հաղպատի վանքը (1946): Հ-ի նախագծերով Երևանում կառուցվել են բնակելի տներ, Երևանի հս-արլ. մուտքը (1960), Հաղթանակի զբոսայգու արհեստ. լիճը (1960), հյուրանոց՝ Զերմուկում (1955) ևն:

ՀԱԿՈԲՅԱՆ Հրանտ Խաչատուրի (1927–2011), փիլ.: Փիլ. գիտ. դ-ր (1989), պրոֆ. (1989): ՀՀ վաստ. մանկավարժ (2010): Հրանուշ ***Հակոբյանի*** հայրը: 1993–2006-ին՝ Գավառի պետ. համալսարանի հիմնադիր-ռեկտոր: Աշխ-ները հիմնականում վերաբերում են Րաֆֆու փիլ. հայացքների վերլուծությանը («Րաֆֆու պայքարը ֆեոդալիզմի հոգևոր ճնշման դեմ», 1967, «Հայ հեղափոխական դեմոկրատների փիլիսոփայական հայացքները», 1989, «Եղեռնի դատապարտումը Րաֆֆու երկերում», 1999): Հեղինակ է նաև «Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից» (2003) երկի:

ՀԱԿՈԲՅԱՆ Հրանուշ Հրանտի (ծ. 1954), պետ. գործիչ: Իրավաբ. գիտ. դ-ր (2006), պրոֆ. (2011): Հրանտ ***Հակոբյանի*** դուստրը: 1985–90-ին՝ ՀԼԿԵՄ ԿԿ 1-ին քարտուղար, 1996–98-ին՝ ՀՀ սոցիալ. ապահովության, 2008-ից՝ Սփյուռքի նախարար: Աշխ-ները վերաբերում են ՀՀ Ազ սահմանադրական իրավ. կարգավիճակին, Հայաստանում պառլամենտարիզմի զարգացման հեռանկարներին և այլ հարցերի:

ԽՍՀՄ ժողդ-ների բարեկամության (1986), «Արժանիքների համար» (2009, Ֆրանսիա) շքանշաններ, ՀՀ «Մխիթար Գոշ» (2011), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի (2015) մեդալներ:

ՀԱԿՈԲՅԱՆ Հրաչյա Նիկոլայի (1935–1982), գեղանկարիչ: Հեղինակ է բնանկարների («Արջասար: Գուրզուֆ», 1981, ևն), դիմանկարների («Ինքնանկար», 1972, ևն), նատյուրմորտների («Խնձորով նատյուրմորտ», 1972, «Քութակահարուհի: Անահիտ», 1975, ևն), գեղանկարների («Խաչելություն», 1982, ևն), ԵՕԲԹ ճեմասրահի որմնանկարների էսքիզների (1979–81), գծանկարների ևն:

ՀԱԿՈԲՅԱՆ Հրավարդ Հրաչյայի (ծ. 1930), արվեստաբան: Արվեստագիտ. դ-ր (1985), պրոֆ. (1989): ՌԴ հումանիտար ԳԱ անդամ (1997): Հեղինակ է «Վասպուրականի մանրանկարչությունը» (գիրք 1, 2, 1976, 1982), «Հայկական մանրանկարչությունը XIII–XIV դդ.» (անգլ., ֆրանս., գերմ., 1984, համահեղ.), «Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը XIII–XIV դդ.» (1989), «Կերպարվեստը հայոց կրթարաններում» (1996), «Հայերը և Իտալիան» (1999), «Հայոց տերունական սրբապատկերները» (2003), «Հայ արվեստի պատմություն» (համահեղ., 2009) և այլ աշխ-ների:

ԼՂՀ Եղիշեի անվ. (1996), ՀՀ Պետ. (2009) մրց-ներ:

ՀԱԿՈԲՅԱՆ Ղևոնդ Ավագի (1908–1988), խորհրդ. ճարտարագիտ. զորքերի գեներալ-մայոր (1958): ՀՄՊ-ի ժամանակ հատուկ ծառայության ճարտարագետ-հրահանգիչ Հվ. ռազմաճակատի ՌՕՈՒ շտաբում, 1943-ից՝ ՌՕՈՒ 4-րդ բանակի գլխ. ճարտարագետի տեղակալ: Մասնակցել է Հս. Կովկասի, Թամանի, Կուրանի, Ուկրաինայի, Բելոռուսիայի ազատագրմանը, Լեհաստանում, Չեխոսլովակիայում և Գերմանիայում մղված մարտերին: 1945–47-ին ծառայել է Գերմանիայում տեղակայված խորհրդ. զորախմբում, 1947–50-ին՝ ՌՕՈՒ ԳՇ-ում, 1951–63-ին՝ Կիևի ճարտարագիտաավիացիոն բարձրագույն ռազմ. ուսումնարանի ռադիոտեխ. ֆակ-ի պետ:

ՀԱԿՈԲՅԱՆ Սարիամ Վահանի (ծ. 1949), քանդակագործուհի: 2001-ից՝ «Նորէրա» ստեղծագործ. կենտրոնի (Երևան) հիմնադիր-նախագահ: Հեղինակ է փոքրածավալ քանդակների («Քավարանի դարպասները», 1996, «Դրախտի դարպասները», 1998, «Կենաց անիվը», 1999, ևն), մոնումենտալ գործերի («Հայոց ոգի», 1989, «Եղիցի կյանք», 2002, «Նոր տիեզերք», 2004, ևն):

Հայաստանում քրիստոնեությունը պետ. կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված հուշարձանի 1-ին (2001, Վիեննա), «Քար-հուշարձան» (2001, Քանչուն, Չինաստան) մրցանակաբաշխության 2-րդ մրց-ներ ևն:

ՀԱԿՈԲՅԱՆ Միքայել Նավասարդի (1925–1983), արձակագիր, խմբ., մատենագետ: Պատմ. գիտ. թեկնածու (1974): ՀՄՊ-ի մասնակից: 1966–69-ին՝ Հայկ. հանրագիտարանի պատ. քարտուղար: Հեղինակ

է «Անհայտ կորած մարդիկ» (1964), «Որդու վերադարձը» (1968), «Աստղերը չեն ընկնում» (1970), ««Մետեորա» հանդեսը արևմտահայ լուսավորական-դեմոկրատական շարժման մեջ» (1977), «Կոմիսարը» (1982) և այլ վավերագր. երկերի, «Զմյուռնահայ պարբերական մամուլը. 1861–1880 թթ.» (1987), «Ստեփան Ոսկանյանը և նրա միջավայրը» (2005) և այլ աշխ-ների:

ԽՍՀՄ Կարմիր աստղի շքանշան (1945):

ՀԱԿՈԲՅԱՆ Մովսես Հրանտի (ծ. 1965), ԼՂՀ ՊԲ գեն-լեյտ. (2007, գեն-մայոր՝ 2000): Արցախի հերոս (2002): ՀՀ ԶՈՒ ԳԾ պետ (2016–ից, 2015-ից՝ պետի տեղակալ): 1992–99-ին՝ ԼՂՀ Մարտունու, ապա՝ Մարտակերտի պաշտպ. շրջանների հրամ., 1999–2000-ին՝ ՊԲ հրամ-ի տեղակալ, 2000–02-ին և 2003-ից՝ ՊԲ շտաբի պետ, ՊԲ հրամ-ի առաջին տեղակալ: 2007–15-ին՝ ԼՂՀ պաշտպ-յան նախարար:

ԼՂՀ «Ոսկե արծիվ» (2002), ԼՂՀ 1-ին և ՀՀ 2-րդ աստիճանների «Մարտական խաչ» (երկուսն էլ՝ 1996), ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի (2015) շքանշաններ, ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ և 1-ին աստիճանի (2013) և այլ մեդալներ:

ՀԱԿՈԲՅԱՆ Յուրի Ռուբենի (ծ. 1949), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (2000), պրոֆ. (2006): Աշխ-ները վերաբերում են դիֆերենցիալ հավասարումների թվային լուծմանը, գծային հանրահաշվի թվային, հանրահաշվ. բազմացանցային վերապայմանավորման մեթոդներին: ԵՊՀ ոսկե մեդալ (2009):

ՀԱԿՈԲՅԱՆ Նաիրա Ռաֆայելի (ծ. 1966), հոգեբան: Հոգեբ. գիտ. դ-ր (2004), պրոֆ. (2005): ՀՀ Պետ. կառավարման ակադ-ի պրոռեկտոր (2002–05), PR տեխնոլոգիաների և սոցիալ-հոգեբ. կենտրոնի տնօրեն (2005–07): 2008-ից՝ «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» հանդեսի հիմնադիր-խմբ.: Աշխ-ները վերաբերում են սոցիալ. և ազգ. հոգեբ-յան խնդիրներին:

ՀԱԿՈԲՅԱՆ Ներսես Բաբայի (1892–1954), հիգիենիստ: Բժշկ. գիտ. դ-ր (1937), պրոֆ. (1938): Աշխ-ները վերաբերում են մթն-ում վնասակար նյութերի ՄԹԿ-ին, թափոնների վնասազերծման և ջրամատակարարման խնդիրներին: Հ-ի անունով է կոչվել (1971-ից) Երևանի Ընդհ. հիգիենայի և մասնագիտ. հիվանդությունների ԳՀԻ-ն:

ՀԱԿՈԲՅԱՆ Նիկոլայ Սարգսի (ծ. 1930), ֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ-ր (1982), պրոֆ. (1982): Աշխ-ները վերաբերում են ցածր մթն. ճնշման պայմաններում ԿՆՀ-ի, հատկապես՝ շնչառ. կենտրոնի նեյրոնային ակտիվության և ֆունկցիոնալ վիճակի ուսումնասիրությանը:

ՀԱԿՈԲՅԱՆ Շահեն Հովհաննեսի (1920–2007), գեղանկարիչ: ՀԽՍՀ վաստ. նկարիչ (1965): 1956–83-ին՝ հայկ. հեռուստաստուդիայի գլխ. նկարիչ (Ե. Օտյանի «Թաղականին կնիկը», 1982, Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ», 1987, ևն): Ձևավորել է նաև թատեր. և օպեր. ներկայացումներ (Տ. Չուխաճյանի «Կարինե», 1950, Երևանի ԵԿՊԹ, Ջ. Վերդիի «Տրուբադուր», 1957, ԵՕԲԹ, Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար», 1974, Գ. Սունդուկյանի անվ. թատրոն, ևն):

ՀԱԿՈԲՅԱՆ Պերճ Նավասարդի (1905–1977), գյուղատնտես: Կենսբ. գիտ. դ-ր (1966), պրոֆ. (1967): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1974): Աշխ-ները վերաբերում են հողի մշակությանը, ցանքաշրջանառության, ՀՀ լեռն. շրջանների (Սևանի ավազան) երկրագործ. համակարգերի ուսումնասիրությանը:

ՀԱԿՈԲՅԱՆ Պիոն Հովսեփի (1926–2000), գրականագետ, բնագրագետ, խմբ.: Բանասիր. գիտ. դ-ր (1969), պրոֆ. (1983): 1969–ից՝ *«Լրարեր հասարակական գիտությունների»* հանդեսի գլխ. խմբ-ի տեղակալ: Հեղինակ է «Խաչատուր Աբովյան: Կյանքը, գործը, ժամանակը (1809–1836)» (1967), «Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ» (1978), «Վերելք» (1982), «Հայ կաթոլիկությունը պատմաքննական լույսի տակ» (1993, անգլ.՝ 1994), «Խաչատուր Աբովյանի կենսագրության առեղծվածները» (1997) և այլ աշխ-ների: Հայտնաբերել և գիտ. շրջանառության մեջ է դրել հայ գրկ-յան և հայագիտ-յան պատմությանը վերաբերող նորահայտ սկզբնաղբյուրներ ու վավերագրեր: Լրացրել և հրտ-յան է պատրաստել Ե. Շահազիզի «Աշտարակի պատմությունը» (1987) պատմագիտ. աշխ-ը:

ՀԱԿՈԲՅԱՆ Ռաֆիկ Եղիշեի (1931–2004), քիմիկոս: Տեխ. գիտ. դ-ր (1985), պրոֆ. (1986): Աշխ-ները վերաբերում են երկֆազ համակարգերի հիդրոդինամիկայի հարցերին:

ՀԱԿՈԲՅԱՆ Ռաֆիկ Սերգեյի (ծ. 1956), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1995), պրոֆ. (2000): Աշխ-ները վերաբերում են լազերով մակածված հիդրոդինամիկ. ու կողմնորոշումային շարժումներին, հեղուկ բյուրեղների ոչ գծային օպտիկային և ջերմադինամիկային: ՀԼԿԵՄ մրց. (1986), ՀՀ ԳԱԱ պատվոգիր (2005):

ՀԱԿՈԲՅԱՆ Ռուբեն Երվանդի (1939–2009), էլեկտրամեխանիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1997), պրոֆ. (1997): Աշխ-ները վերաբերում են հիդրոգեներատորների ջերմային ախտորոշմանը և մեծ հզորության էլ. մեքենաների հարաչափերի հետազոտմանը:

ՀԱԿՈԲՅԱՆ Ռուբեն Ղազարի (1912–1994), ավազ լեյտ.: ԽՄ հերոս (1944): ՀՄՊ-ի ժամանակ (1943-ից) մասնակցել է 4-րդ ուկր. ռազմաճակատի 2-րդ գվարդ. բանակի ռազմ. գործողություններին: Հերոսի կոչման արժանացել է Ղրիմի համար մղված մարտերում ցուցաբերած խիզախության համար:

ՀԱԿՈԲՅԱՆ Ռուբեն Սեդրակի (1900–1990), ճարտ.: ՀԽՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1960): 1932–37-ին՝ ՀԽՍՀ կառուցվածքների ԳՀԻ տնօրեն: Նրա նախագծով Երևանի Թումանյան փողոցում կառուցվել է վարչ. շենք (1930, 1970–2005-ին շենքում գործել է Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրությունը), Հայաստանի շին-յան մեջ օգտագործել են թեթև բետոն ու երկաթբետոն:

ՀԱԿՈԲՅԱՆ Ռուզաննա Խաչիկի (ծ. 1972), իրավաբան: Իրավար. գիտ. դ-ր (2012): 2006-ից՝ Գավառի պետ. համալսարանի ռեկտոր: Աշխ-ները վերաբերում են հանր. իրավունքի հարցերին: Հեղինակ է իրավար. տերմինների և շրջասույթների ռուս-հայ. բառարանի:

ՀԱԿՈԲՅԱՆ Սամվել Յոլակի (ծ. 1949), երկրաֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1987): Երկրաշարժերի կանխատեսման «Գեոկվեյկ» կենտրոնի գլխ. տնօրեն (2007-ից, Մոսկվա): Աշխ-ները վերաբերում են Երկրի սեփ. տատանումների տեսությանը, ընդերքի կառուցվածքին և սալերի տեկտոնիկային: Առաջադրել է Երկրի ոչ առաձգ. սեփ. տատանումների տեսություն, ընդերքի դինամիկ մոդուլի գաղափարը, Երկրի հարաչափ. մոդուլների կառուցման և երկրաշարժերի կանխատեսման նոր եղանակ: Երկրաէկոլոգիայի միջազգ. ակադ-ի անդամ:

ՀԱԿՈԲՅԱՆ Սարգիս Արշակի (1915–2005), ֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ-ր (1955), պրոֆ. (1956): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1962): Զբաղվել է միջավայրի ծայրահեղ գործոնների (իոնացնող ճառագայթում, թթվածնաքաղց, թրթռում, աղմուկ ևն) ազդեցության պայմաններում սիրտ-անոթ., շնչառության, մարսողության, արտաթորության համակարգերի գործունեության և կենսաոհթոների ուսումնասիրմամբ: Բացահայտել է ՀՀ որոշ հանք. ջրերի բուժիչ ներգործությունն օրգանիզմի վրա:

ՀԱԿՈԲՅԱՆ Սեմյոն Խորենի (1956–2014), ՀՀ բանակի գեն-մայոր (2001): 1992–99-ին՝ ՀՀ ԶՈՒ-ում (թիկունքի վարչության պետ, ՀՀ գլխ. ռազմ. տեսչության ավագ սպա): 2000–04-ին՝ ԼՂՀ ՊԲ ԳԾ պետ, ՊԲ հրամ-ի տեղակալ, 2004-ից՝ ՀՀ ՊՆ հատուկ հանձնարարությունների գծով գեն.:

ՀՀ «Մարտական ծառայության համար» և այլ մեդալներ:

ՀԱԿՈԲՅԱՆ Սիմեոն Հարությունի (1880–1942), գրականագետ: Պրոֆ. (1929): 1922–24-ին՝ «Արեգ» ամսագրի խմբ.: Հեղինակ է «Շիրուանզադէ» (1911), «Արեւմտահայ բանաստեղծներ. Պետրոս Դուրեան» (1922), «Եղիշէ Չարենց» (1924) և այլ մենագրությունների, «Ռոմէն Ռոլան: Հանրի Բարբիւս» (1922), «Ստէֆան Յուայգ: Անդրէաս Լացկօ» (1923), «Լեսսինգ» (1937) աշխ-ների, բուհ. դասագրքերի: Անհատի պաշտամունքի զոհ:

ՀԱԿՈԲՅԱՆ Սիմոն (1857–1921), գեղանկարիչ: Հեղինակ է դիմանկարների («Վանեցի մուրացիկը», Ռ. Պերպերյանի դիմանկարը, «Հոր դիմանկարը», «Սուլթանի դիմանկարը» ևն), կրոն. և այլ թեմաներով պատկերների («Պոլսի Սոֆո Սեյիդ Մեհմիդ փաշայի մզկիթի մեդրեսեն», «Թուրքական հին փողոցի տեսարան» ևն): Մարսելի ցուցահանդեսի մրց.:

ՀԱԿՈԲՅԱՆ Սմբատ Հայկի (1930–2011), ճարտարագետ-էներգետիկ: Տեխ. գիտ. դ-ր (1993), պրոֆ. (1995): Աշխ-ները վերաբերում են էներգետիկ. համակարգերը մասնագիտացված հաշվիչ մեքենաներով մշակման, գազատար ցանցերի գլխ. պլանի զարգացման հարցերին:

ՀԱԿՈԲՅԱՆ Սուրեն Երվանդի (1907–1976), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1953), պրոֆ. (1954): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1968): Աշխ-ները վերաբերում են հայ ժողդ-ի ազատագր. պայքարի, պատմագրության և սոցիալ-տնտ. հարցերին:

ՀԱԿՈԲՅԱՆ Սուրեն Իշխանի (1901–1986), ճարտարագետ-մեխանիկոս: Տեխ. գիտ. թեկնածու (1941), պրոֆ. (1963): Եղել է Տրակտորների համամիութ. ԳՀԻ տնօրեն (1950–63, Մոսկվա): Աշխ-ները վերաբերում են ներքին այրման շարժիչների վառելիք. սարքերի, գազագեներատոր. և այլ շարժիչների, տրակտորների առանձին հանգույցների ու մասերի մշակմանը:

ՀԱԿՈԲՅԱՆ Վազգեն Արտաշեսի (1913–1982), պատմաբան, աղբյուրագետ: Պատմ. գիտ. դ-ր (1967), պրոֆ. (1972): «Մանր ժամանակագրություններ XIII–

XVIII դդ.» (հ. 1, 2, 1951, 1956) ժող–ում ներկայացրել է 85 ժամանակագրություն, որոնց մեծ մասն առաջին անգամ դրել է գիտ. շրջանառության մեջ: Կազմել է և հրատարակել միջնադար. հայ եկեղեց. իրավունքի՝ «Կանոնագիրք Հայոց» (հ. 1, 2, 1964, 1971, ՀԽՍՀ ԳԱ Մեսրոպ Մաշտոցի անվ. մրց.՝ 1974) ժող–ը, «Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարանները» (հ. 1–3, 1974–84, 1–ին հատորը՝ Աշոտ *Հովհաննիսյանի* հետ), մասնակցել «Հայ–ռուսական հարաբերությունները XVIII դ. առաջին երրորդում» (ռուս., հ. 2, մաս 1, 2, 1964, 1967) և «Մեսրոպ Մաշտոց» (1962) ժող–ների ստեղծմանը:

ՀԱԿՈԲՅԱՆ Վազգեն Կարապետի (ծ. 1926), դերասան: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1965): 1946–ից՝ Լենինականի դրամատիկ. թատրոնի դերասան (Կասիո՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», Տոնինո և Ջանետտ՝ Կ. Գոլդոնիի «Վենետիկյան երկվորյակներ», Ջամբախով՝ Գ. Սունդուկյանի «Խաթաբալա», Քերոտ՝ Օ՝Նիլի «Սերը ծփինների տակ», ևն):

ՀԱԿՈԲՅԱՆ Վահրամ Նասլետնիկի (ծ. 1954), մեխանիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1998): ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստ–ի տնօրեն (2006–ից): Աշխ–ները վերաբերում են լարումների տարբեր տիպերի կենտրոնացուցիչների և ձևափոխվող հոծ մարմինների փոխազդեցության խառը խնդիրներին:

ՀԱԿՈԲՅԱՆ Վարդան, **Հեսու Վարդապետ** (1862–1915), ազգ–ազատագր. շարժման գործիչ: 1890–ական թթ–ի վերջից՝ Սշո Սբ Կարապետ վանքի վանահայր: 1904–ի Սասունի ապստամբության պարտությունից հետո դեմ է եղել Սշո դաշտում հայդուկ. կռիվներին: 1915–ի ապրիլին ընտրվել է Սուշի հոգևոր առաջնորդ: Զոհվել է գաղթի ճանապարհին:

ՀԱԿՈԲՅԱՆ Վարդան (Սլավիկ) Սարգսի (ծ. 1948), բանաստեղծ, դրամատուրգ, խմբ.: Բանասիր. գիտ. դ–ր (1998), պրոֆ. (1998): ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2005): «Արցախ» (1989) և «Պըլը–Պուղի» (1991) հանդեսների հիմնադիր–խմբ.: 1991–ից՝ *«Եղիցի լույս»* պաշտոնաթերթի գլխ. խմբ.: 1991–ից՝ ԼՂՀ ԳՄ նախագահ: Հեղինակ է «Մայրանում է լույսը» (1975), «Արցախա ծուխ» (1989), «Քարի շնչառությունը...» (2004), «Երգը որպես հանդիպման վայր» (2009), «Փակիր աչքերդ՝ չերևաս...» (2011), «Նշագրություն լուսնի վրա» (2016) և այլ բանաստեղծությունների ու պոեմների ժող–ների, «Զատիկը ջրավազանի հատակին» (2010) վեպի, ԼՂՀ պետ. օրհներգի տեքստի:

ՀԳՄ Ա. Իսահակյանի անվ. (1989), «Վահագն» համահայկ. (2005), ՀՀ նախագահի (2010) և այլ մրց–ներ, ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ» (2001) մեդալ, «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2008), «Գրիգոր Լուսավորիչ» (2016) շքանշաններ, «Մայրական երախտագիտություն՝ Արցախի քաջորդիներին» (1998), ՀՀ ՄՆ ոսկե (2008) մեդալներ, Ֆրիտյոֆ Նանսեն հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2012):

ՀԱԿՈԲՅԱՆ Վարդգես Թորգոմի (1932–1975), երկրաբան: Երկրբ–ինքբ. գիտ. դ–ր (1973): Աշխ–ները վերաբերում են Հայաստանի տարածքի յուրայի և կավճի ժամանակաշրջանների նստվածքների շերտագրության ու ֆաունայի հարցերին: Կազմել է ՀԽՍՀ կավճի ժամանակաշրջանի նստվածքների քարտեզը:

ՀԱԿՈԲՅԱՆ Վեներա Հովսեփի (1904–1988), դերասանուհի: ՎԽՍՀ ժող. արտիստ (1964): 1924–27–ին՝ Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի, Լենինականի Քաղլուսվարի, 1928–88–ին՝ Թբիլիսիի հայկ. թատրոնների դերասանուհի (Կեկել, Էփեմիա՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», Գալչիխա՝ Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», Էմիլիա՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», ևն): Նկարահանվել է կինոյում:

ՀԱԿՈԲՅԱՆ Վերա Ամբակումի (1928–2017), ասմունքող, ռադիոհաղորդավար (1951–ից): ՀՀ վաստ. արտիստ (1972): Հանր. ռադիոյի «Պոեզիայի ժամ» հաղորդաշարի հեղինակ:

ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1–ին աստիճանի մեդալ (2013):

ՀԱԿՈԲՅԱՆ Վերդի Զահանգիրի (1926–2009), մակաբուծաբան: Անասնաբուժ. գիտ. դ–ր (1973), պրոֆ. (1987): Աշխ–ները վերաբերում են գաղտ. կենդանիների լյարդի տափակ որդերի և աղիք. խառն ինվազիաների, ինչպես նաև հակատզային և հակամիջատ. նոր արդյունավետ, ոչ թունավոր դեղամիջոցների մշակման հարցերին:

ՀԱԿՈԲՅԱՆ Վիկտոր Իսահակի (1926–2008), անասնաբույծ–ընտրասերումնաբան: Գաղտ. գիտ. դ–ր (1973), ՀԳԱԱ թղթ. անդամ (1999): Աշխ–ները վերաբերում են գաղտ. թռչունների կերակրման խնդիրներին: Երևանյան հավերի ցեղի ստեղծողներից: ԽՍՀՄ ՆԽ մրց. (1979):

ՀԱԿՈԲՅԱՆ Վիոլեն Պարույրի (ծ. 1938), դերասան: Բժշկ. գիտ. դ–ր (1977), պրոֆ. (1979), ՀՀ ԳԱԱ ակադ. (1994, թղթ. անդամ՝ 1990–ից): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2013): Եղել է ԵՊԲ ռեկտոր (1987–2006), ՀՀ ԳԱԱ բնական գիտ–յունների բաժանմունքի ակադ. քարտուղար (2006–16): Բացահայտել է գլխուղեղի անոթներում ամինակարագաթթվի (γ–ԱԿԹ) և նրա գոյացմանը նպաստող ֆերմենտների առկայությունը, պարզել է γ–ԱԿԹ–ի դերը գլխուղեղի արյան շրջանառության խանգարումների ժամանակ:

ՀՀ նախագահի մրց. (2003), ՀԱԵ «Սբ Սահակ – Սբ Մեսրոպ» (2004), ՀՀ «Մեսրոպ Մաշտոց» (2005) շքանշաններ, «Մխիթար Հերացի» (1998), ԵԳԱ Ա. Շվեյցերի ոսկե (1998), ՌԴ ԲԳԱ Վ. Ի Վեռնադսկու «Ոսկե աստղ» (2001) մեդալներ, Ֆրիտյոֆ Նանսեն (2001) հիմնադրամի ոսկե հուշամեդալ: Մի շարք արտ. ակադ–ների անդամ, Երևանի պատվ. քաղաքացի (2000):

ՀԱԿՈԲՅԱՆ Վլադիմիր Էդուարդի (ծ. 1971), շախմատիստ, միջազգ. գրոսմայստեր (1991): Պատանիների աշխարհի (1986, 1989, 1990), համամիութ. (1981, 1982, 1983, 1984, 1986), միջազգ. (1990, 1991, 1992) մրցաշարերի հաղթող, աշխարհի առաջնության 2–րդ մրց. (1999), Համաշխ. օլիմպիադայի բրոնզե (1992), ՀՀ հավաքականի կազմում՝ բրոնզե (1997, 2001, 2005), Եվրոպայի առաջնություններում՝ արծաթե (2007) մեդալներ, Հայաստանի հավաքականի կազմում՝ Շախմատի համաշխ. օլիմպիադաների (2006, 2008, 2012), աշխարհի թիմ. առաջնության (2011) չեմպիոն, Դուբայի արագ շախմատի մրցաշարի հաղթող (2016):

ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1–ին աստիճանի մեդալ (2008), «Պատվո շքանշան» (2012):

ՀԱԿՈԲՅԱՆ Վլադիմիր Սերգեյի (ծ. 1954), ակնաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1984), պրոֆ. (1989): ՌԴ վաստ. բժիշկ: ՌԴ նախագահի Բժշկ. գործերով գլխ. վարչության ակնաբանության գծով գիտ. ղեկ. և խորհրդական (1974–ից): Աշխ–ները վերաբերում են աչքի առաջային և հետին բաժինների ախտահարումների հետազոտություններին: Աշխարհում առաջինն է կիրառել գլաուկոմայի լազերային բուժման յուրահատուկ եղանակ: ՀամԼԿԵՄ մրց. (1978):

ՀԱԿՈԲՅԱՆ Տարիել Արամի (ծ. 1941), քանդ., մանկավարժ: Պրոֆ. (1992): Հեղինակ է դիմաքանդակների («Լուսաբեր մայրս», 1974, «Կաթողիկոս Վազգեն Առաջին», 1997, «Ա. (Կղոդ) Սուաքֆյան», 2015, ևն), մոնումենտալ կոմպոզիցիոն գործերի («Պուշկինյան թեմաներ», 2007–16, ևն), հուշարձանների՝ Արտաշատ քի մուտքը (1989), ՀՄՊ–ում զոհվածներին նվիրված (1969, Հայկավան, Արմավիրի մարզ, 1976, Ուստ Կամենոգորսկ, Ղազախստան, ևն), Վիկտոր Համբարձումյանի (2008, Իրան, 2009, Երևան), «Ջորավար Անդրանիկ» (2016, Սևան), ՀՀ Ազգ. հերոս Թաթուլ Կրպեյանի հուշահամալիրի (1992, Արագածոտնի մարզ, գ. Արեգ) և այլ գործերի:

Որդին՝ **Գուրգեն Հ.** (ծ. 1982), քանդ.: Հեղինակ է կոմպոզիցիոն քանդակների, հուշակոթողների՝ «Բարեկամության ծառ» (2008, Ֆրանսիա), «Էություն» (2006, Արտաշատ), Մեծ եղեռնի 100–ամյակին նվիրված խաչքարի (2016, Ավստրալիա), հուշամեդալների («Ա. Բաբաջանյան», 2012, «Մոցարտ», 2013, «Է. Միրզոյան», «Կոմիտաս», 2015, ևն): Մեդալագործների միջազգ. միության անդամ (2013–ից):

ՀԱԿՈԲՅԱՆ Յոլակ Գրիգորի (1916–1977), երկրաֆիզիկոս: Երկրբ–ինքբ. գիտ. դ–ր (1973): Եղել է Գյումրիի երկրաֆիզիկայի և ինժեներ. սեյսմոլոգիայի ինստ–ի տնօրեն (1961–73), Գառնի երկրաֆիզ. դիտակայանի ղեկ. (1973–77): Աշխ–ները վերաբերում են մագնիսաչափության և երկրաֆիզ. այլ հարցերի:

ՀԱԿՈԲՅԱՆ Ֆելիքս Սահակի (1934–2016), ճարտ.: Նախագծերով Երևանում կառուցվել են «Գուսան» (1960), «Առագաստ» (1964) սրճարանները, համահեղինակ է Օղակաձև գբոսայգու 1–ին (1963) և 4–րդ (1968) հատվածների, «Անի» (1972), «Դվին» (1978) հյուրանոցների, բնակելի շենքերի, Դիլիջանում՝ Էլեկտրահաշվիչ մեքենաների ուսումնարանի շենքի (1988) նախագծերի:

ՀԽՍՀ Պետ. մրց. (1979):

ՀԱԿՈԲՅԱՆՑ Ալեքսանդր Միքայելի (1859–1931), մաշկավեներաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1899): Ս. Օ. *Խատամանովի* հետ աշխարհում առաջինն է ստացել (1897) փափուկ շանկր հիվանդության հարուցչի մաքուր մանրէախումբը, որի շնորհիվ փափուկ շանկրն առանձնացվել է որպես ինքնուրույն հիվանդություն: Աշխ–ները վերաբերում են սիֆիլիսի և սուր միզուկարորքի բուժմանը, «Բորժոմ» հանք. ջրի քիմ. բաղադրության հարցերին:

ՀԱԿՈԲՅԱՆՑ Գևորգ Թամրազի (1920–1976), գնդ., ԽՄ հերոս (03.06.1944): Հ–ի վաշտը (ապա՝ գումարտակ) Հվ. ռազմաճակատում մասնակցել է Տագանրոգ, Վորոշիլովգրադ և Դոնի Ռոստով ք–ների պաշտպ. մարտերին: Հերոսի կոչման արժանացել է Դնեպրի գետանցման և Խերսոնի ազատագրման ժամանակ ցուցաբերած խիզախության համար:

ՀԱԿՈԲՈՍ ՎՈՐԱԳԻՆԵՑԻ (Jacobus de Voragine, մոտ 1230–1298), դոմինիկյան վանական, քարոզիչ, Ջենովայի եպս. (1292–ից), կաթոլիկ սուրբ: Հեղինակ է

«Ոսկե լեգենդներ» ժող–ի, որտեղ շարադրել է միջնադար. Եվրոպայում մեծ հեղինակություն վայելած սրբերի վարքերը:

ՀԱԿՈԲՈՎ Պողոս Սեմյոնի (ծ. 1926), դիվանագետ: ՌԴ դիվանագիտ. ծառայության և ՆԳ վաստ. աշխատող: 1983–86–ին՝ ԽՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան Քուվեյթում, 1987– 91–ին՝ Լիբիայում: Եղել է ԽՍՀՄ Արտաքին քաղ–յան ընկերակցության փոխնախագահը: Պաղեստինյան ուղղափառ կայսերական ընկ–յան պատվ. անդամ: ԽՍՀՄ Աշխ. կարմիր աստղի, «Պատվո նշան» շքանշաններ:

Որդին՝ **Սերգեյ Պողոսի Հ.** (ծ. 1954), դիվանագետ: Ունի արտակարգ և լիազոր դեսպանի դիվանագիտ. աստիճան (2015): ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Բրազիլիայում և Սուրինամում (2010–ից՝ համատեղությամբ):

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ Դավիթ Գևորգի (1877/78–1942), ճարտարագետ–մեքենագետ, դոցենտ (1933): Աշխ–ները վերաբերում են օդի և ջրի գոլորշու խառնուրդով աշխատող շարժիչների և ներքին այրման տուրբինների մշակման տես. հարցերին: «Ռուս–հայերեն շինարարական կառուցվածքների բառարանի» (1928) համահեղ.:

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ Եկատերինա Սամսոնի (1938–2002), փիլ.: Փիլ. գիտ. դ–ր (1986): Աշխ–ները վերաբերում են գեղագիտ–յան խնդիրներին («Գիտության գեղագիտական ուժը», 1990, «Գեղարվեստական փաստարկում», 1991, ևն, բոլորը՝ ռուս.):

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ Վիկտորիա Ռաֆայելի (1922–1990), մանկ. վնասվածքաբան–օրթոպեդ: Բժշկ. գիտ. դ–ր (1963): Աշխ–ները վերաբերում են մանկ. խողովակավոր ոսկրերի կոտրվածքների, արյունածին ոսկրածուծաբորբի և էպիֆիզեոլիզի բուժման, մանկ. և դպրոց. տարիքի երեխաների վնասվածքների կանխարգելման հարցերին: ՀԽՍՀ ԱՆ մանկ. գլխ. վնասվածքաբան–օրթոպեդ (1963–74):

ՀԱԿՈԴԱՏԵ, ք. Ճապոնիայի հվ–արմ–ում՝ Հոկայդո կղզում: Նվինգստ՝ Յուգարու ծոցում: Բն.՝ 280 հզ. (2011):

ՀԱԿՈՎԼԵՅԱՆ Արամայիս Արիստակեսի (1900–1974), մաշկավեներաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1937), պրոֆ. (1940): Ուզբ. ԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1960): Վահան *Հակովբյանի* հայրը: Մաշկաբանների ուզբ. դպրոցի հիմնադիրը: Առաջարկել և հաջողությամբ կիրառել է իմունացված կենդանու շիճուկը՝ փափուկ շանկրի բուժման համար: Մշակել է Ուզբեկստանում սիֆիլիսի դեմ պայքարի, բուժման և կանխարգելման միջոցառումներ:

Ուզբ. ԽՍՀ ԱՆ գլխ. վեներաբան, Տաշքենդի մաշկավեներաբանների գիտ. ընկ–յան նախագահ: ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի և «Պատվո նշան» շքանշաններ:

ՀԱԿՈՎԼԵՅԱՆ Վահան Արամայիսի (ծ. 1941), մաշկավեներաբան, առողջապ–յան կազմակերպիչ: Բժշկ. գիտ. դ–ր (1988), պրոֆ. (1990): Արամայիս *Հակովբյանի* որդին: 1986–92–ին՝ Տաշքենդի մաշկավեներաբանության ԳՀԻ տնօրեն: 1999–2001–ին՝ ՌԴ ԱՆ Մաշկավեներաբան. ինստ–ի փոխտնօրեն՝ գիտ–յան գծով: Մասնակցել է սիֆիլիսի (բենզիլպենիցիլինով և ցեֆալոսպորինով) ու գոնոռեայի (ցեֆալոսպորինով) և սեռ. ճանապարհով փոխանցվող այլ վարակների բուժման մեթոդների, Ուզբեկստանում ու Ռուսաստանում դրանց տարածման կանխարգելման պետ. ծրագրերի մշակմանը:

ՀԱԿՈՒՄ, 1. կենդանի օրգանիզմի որևէ պահանջը բավարարելու ձգտում: Մարդու Հ. բնածին է (բնազդ.) և սոցիոգեն: Որպես ակտիվության դրդապատճառ՝ Հ. շարժման մեջ է դնում օրգանիզմի զգայական, շարժող. և բարձրագույն իմացական հնարավորությունները՝ օրյեկտի որոնման և պահանջմունքի բավարարման խնդիրներ լուծելիս: **Կենդանու Հ.** հիմնականում բնազդային է (տես *Բնազդ*): Կենդանիների Հ–ների ուսումնասիրությամբ զբաղվում է *էթոլոգիան*: 2. (Երկրբ–յան մեջ) տես *Երկնային կոօրդինատներ:*

ՀԱՂԱՐՏԻՆ, գետ Տավուշի մարզում, Աղստևի ձախ վտակը: Սկիզբ է առնում Հալաբի լ–շղթայի հվ. լանջերից՝ 2200 *մ* բարձր–ից: Աղստև է թափվում ծ. մ–ից 1080 *մ* բարձր–յան վրա: Երկ.՝ 10 *կմ*, ավազանը՝ 38 *կմ*²: Վերին հոսանքում հոսում է նեղ, կիրճանման, ստորինում՝ V–ձև հովտով: Մնումը հիմնականում հալոցքային և անձրևային է, վարարումը՝ ապրիլ–հունիսին, ամռանը երբեմն հորդանում է: Գետահովիտն ունի ռեկրեացիոն մեծ նշանակություն: Հ–ի ափին է համանուն վանքային համալիրը (X–XIII դդ.):

ՀԱՂԱՐՏԻՆԻ ԵՐԿԱԹԻ ՀԱՆՔԱՎԱՅՐ, ՀՀ Տավուշի մարզում՝ *Հաղարծին* գետի ստորին հոսանքում՝ Դիլիջանից մոտ 9 *կմ* հվ–արլ–ում: Նստվածք. մագնետիտ–ավազաքար. հանքավայր է: Հանքանյութը կազմված է տիտանամագնետիտ, քիչ քանակով՝ իլմենիտ, նաև պլագիոկլազ ու քվարց միներալներից: Առանձնացվում են երկաթով հարուստ հոծ, միջին հարստության և աղքատ ցանավոր հանքանյութեր: Գնահատված պաշարները 6 մլն *տ* են՝ 26 % Fe–ի միջին պարունակությամբ:

ՀԱՂԱՐՏԻՆԻ ՎԱՆՔ, X–XIII դդ–ի ճարտ. համալիր ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան ք–ից 18 *կմ* հս: Վերելք է ապրել XII դ–ի վերջ–XIII դ–ի սկզբին: Բաղկացած է 4 եկեղեցուց, 2 գավթից, ունի սեղանատուն, աղոթարաններ, խաչքարեր: Վաղագույնը Սբ Գրիգոր եկեղեցին է (մոտ X դ.)՝ ներքուստ՝ խաչաձև, արտաքուստ՝ ուղղանկյուն, գմբեթավոր: Նրան հս–ից կից է Կաթողիկե փոքր եկեղեցին (1194), արմ–ից՝ կենտրոնակազմ քառասյուն գավիթը, 1244–ին կառուցվել է Սբ Ստեփանոս գմբեթավոր եկեղեցին: Վանքի գլխ.՝ Սբ Աստվածածին եկեղեցին կառուցվել է X–XI դդ–ում, վերանորոգվել՝ 1281–ին: Համալիրի սեղանատունը (1248) միջնադարի հայկ. ճարտ. զույգ փոխուղղահայաց խաչվող կամարային ծածկով կառույցի ուշագրավ օրինակներից է: Նորոգվել է 2011–15–ին:

ՀԱՂԱՐՋԵՆԻ (Ribes), կոկոշազգիների ընտանիքի տերևաթափ բույսերի ցեղ: Հատապտղատու մշակաբույս է: Հայտնի է մոտ 150 տեսակ: Մշակովի սորտերից են սև, կարմիր, ոսկեգույն և այլ Հ–ներ: ՀՀ–ում հայտնի է 6 տեսակ (որից 5–ը՝ վայրի)՝ արլ., ալպ., Ախուրյանի, Բիբերշտեյնի, հայկ., սովոր.՝ Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Տավուշի և այլ մարզերի անտառներում, թփուտներում և այլուր: Սովոր. Հ. աճեցվում է գրեթե բոլոր մարզերում: Հատապտուղներում պարունակվում են շաքարներ, խնձորա– և կիտրոնաթթու, C վիտամին: Օգտագործվում է կանաչապատման մեջ: Մեղրատու է: Ախուրյանի և հայկ. տեսակները գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

ՀԱՂԹԱԿԱՄԱՐ, *հաղթադարպաս*, հանդիսավոր շինություն՝ նվիրված ռազմ. հաղթանակի կամ այլ նշանավոր իրադարձության: Լինում են 1 կամ 3 բացվածքով (որմնանցք): Սովորաբար տեղադրվում են քաղաքների մուտքերին, փողոցի վերջին, կամուրջների վրա, զարդաքանդակվում են, փորագրվում: Առաջին հայտնի Հ. կառուցվել է Հին Հռոմում (Տիտոսի Հ., 81):

«ՀԱՂԹԱՆԱԿ», հայկ. պարտիզան. ջոկատ: ՀՄՊ–ի ժամանակ (1943–ի մարտ) կազմակերպել են Ուկր. ԽՍՀ Լվովի մարզի Սելեց–Զավոնի ռազմագերիների ճամբարից փախած մի խումբ հայ ռազմագերիներ: Հրամ.՝ կապիտան Ս. Հարությունյան: Մոտ 1 տարի ջոկատն Արմ. Ուկրաինայում ինքնուրույն մարտնչել է ֆաշիստ. զավթիչների դեմ: 1944–ի հունվին միացել է գեն–մայոր Ս. Կովպակի անվ. 1–ին ուկր. պարտիզան. դիվիզիային՝ կազմելով 3–րդ գնդի 2–րդ վաշտը, մասնակցել է Լվովի և այլ ք–ների, նաև Լեհաստանի ազատագրմանը:

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԴՐՈՇ, Ռայխստագի փլուզված շենքի վրա 1945–ի մայիսի 1–ի վաղ առավոտյան 1–ին բելոռուս. ռազմաճակատի 150–րդ հրաձգ. դիվիզիայի մարտիկների (Միխայիլ Եգորով և Մելիտոն Քանթարիա) բարձրացրած Կարմիր դրոշը: ԽՍՀՄ ժողդ–ների հաղթանակի խորհրդանիշն է, պահվում է Մոսկվայում՝ ՀՄՊ–ի թանգարանում:

ՀԱՂԹԱՆԱԿԻ ՄՈՆՈՒՄԵՆՏ Երևանի, ճարտ. հուշարձան, կառուցվել է 1950–ին Երևանի «Հաղթանակ» զբոսայգում՝ ի նշանավորումն ՀՄՊ–ում տարած հաղթանակի (ճարտ.՝ Ռաֆայել *Իսրայելյան*, քանդ.՝ Սերգեյ *Մերկուրով*, ԽՍՀՄ Պետ. մրց., 1951): Սկզբում տեղադրված Ի. Վ. Ստալինի արձանի փոխարեն 1967–ին կանգնեցվել է «Մայր Հայաստան» խորհրդանշ. քանդակը (քանդ.՝ Արա *Հարությունյան*): Ներքուստ եռահարկ պատվանդանն ընդգրկում է ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» գինվ. թանգարանի սրահները:

ՀԱՂԹԱՆԱԿԻ ՊԻԿ, լ–գագաթ, Տյան Շանի և Ղրղզստանի ամենաբարձր կետը (7439 *մ*)՝ Ղրղզստանի և Չինաստանի Սինցզյան–Ույղուր. ինքնավար շրջանի սահմանին:

ՀԱՂԹԱՆԱԿԻ ՏՈՆ, Հաղթանակի օր, սահմանվել է 1945–ի մայիսի 8–ին, նշվում է 1965–ից՝ մայիսի 9–ին՝ ի պատիվ ՀՄՊ–ում ֆաշիստ. Գերմանիայի դեմ ԽՍՀՄ ժողդ–ների տարած հաղթանակի: ՀՀ–ում Հ. տ. վերածվել է Հաղթանակի և խաղաղության տոնի (2001), ԼՂՀ–ում՝ Եռատոնի (2009, Հաղթանակի տոն, ԼՂՀ պաշտպ–յան բանակի կազմավորման և Շուշիի ազատագրման օր):


ՀԱՂՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ, պինդ մարմնի էլեկտրոնային սպեկտրում մասնակիորեն լցված կամ դատարկ թույլատրված վերին էներգիական գոտի (տես *Գոտիների տեսություն*): Հ. գ. մտած էլեկտրոնները (*հաղորդականության էլեկտրոններ*) և *խոռոչները* պայմանավորում են մարմնի *էլեկտրահաղորդականությունը:*

ՀԱՂՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆՆԵՐ, պինդ մարմնի ապատեղափակված արժեքական էլեկտրոններ: Մետաղներում և կիսահաղորդիչներում՝ լիցքերի կրողները:

ՀԱՂՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, 1. (ֆիզ.) ջերմությունը, ձայնը, էլ. հոսանքը ևն իր միջով անցկացնելու և հաղորդելու՝ նյութի, միջավայրի հատկությունը: 2. (Մթն.)

մթն–ի՝ հոսանք հաղորդելու հատկությունը: Պայմանավորված է միջավայրում իոնների առկայությամբ: 3. (Կենսբ.) գրգռումները հաղորդելու կենդանի հյուսվածքի հատկություն:

ՀԱՂՈՐԴԱԿԻՉ ԱՆՈԹՆԵՐ, ստորին մասում միմյանց միացված անոթներ: Համասեռ հեղուկով լցված Հ. ա–ում հեղուկի մակարդակները հավասար են՝ անկախ անոթների ձևից (եթե ***մազական երևույթներն*** արհամարհվում են): Այս



հանգամանքի վրա է հիմնված ***հեղուկային մանոմետրի*** կառուցվածքը: Տարբեր հեղուկներ լցնելու դեպքում Հ. ա–ում այդ հեղուկների h_1 և h_2 բարձրությունները հակադարձ համեմատական են նրանց ρ_1 և ρ_2 խտություններին, այսինքն՝

$$\rho_1 \cdot h_1 = \rho_2 \cdot h_2 :$$

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ, 1. կապուղի, մի տեղի կապը մյուսի հետ: 2. Շփում, տեղեկությունների փոխանցում մի մարդուց մյուսին: Մարդկանց աշխ–ճանաչող. գործունեության ընթացքում համագործակցման յուրահատուկ ձև, որը կատարվում է հիմնականում լեզվի, նաև նրա նշանային այլ համակարգերի (շարժումներ, միմիկա, հատուկ մշակված նշաններ, օր՝ Սորզեի, ևն) միջոցով:

ՀԱՂՈՐԴԻՉ, 1. (տեխ.) ազդանշաններ, հաղորդագրություններ, պատկերներ ևն հեռ–յունների վրա հաղորդելու սարք: 2. (Ֆիզ.) նյութ կամ միջավայր, որը, շնորհիվ իր մեծ քանակությամբ լիցքավորված շարժուն մասնիկների, օժտված է հաղորդականությամբ: Լինում են էլեկտրոն. (մետաղներ, կիսահաղորդիչներ), իոնային (էլեկտրոլիտներ) և խառը, որոնցում կան և՛ էլեկտրոններ, և՛ իոններ (օր.՝ պլազմա):

ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ, քրիստ. եկեղեցու խորհուրդներից: Ըստ եկեղեցու վարդապետության՝ հավատացյալները, ուտելով նվիրական հացը և ըմպելով գինին (մարմնավորում են Հիսուս Քրիստոսի «ճշմարիտ մարմինն ու արյունը»), հաղորդվում են Քրիստոսին, քավում իրենց «մեղքերը», միանում նրա «մշտնջենավոր կյանքին»: Հ–յան խորհրդով մարդկային կյանքը միանում է աստվածայինին: Հ–յան խորհրդի արարողությունը կոչվում է «անարյուն պատարագ»: ՀԱԵ–ն հորդորում է իր հավատացյալներին տարեկան հաղորդվել նվազագույնը 5 անգամ՝ Տաղավար տոներին:

«ՀԱՂՊԱՏԻ ԱՎԵՏԱՐԱՆ», **«Գետաշենի Ավետարան»**, մագաղաթե ձեռագիր (Մտնդ., ձեռ. № 6288): Ընդօրինակել են 2 գրիչ Հաղպատում, զարդարել ոչ գունավոր կիսախորաններով, զարդագրերով և լուսանցազարդերով: ***Մարգարեն*** Անհում գունազարդել և պատկերազարդել է բարձրարվ. և ինքնատիպ նկարներով (կենցաղ. տեսարաններ, ժամանակի աշխարհիկ կյանքի պատկերներ, պատմ. դեմքեր ևն): 1920–ական թթ–ին Գարեգին ***Հովսեփյանը*** Արցախի Գետաշեն գ–ի եկեղեցուց ձեռագիրը բերել է Էջմիածնի մտնդ.:

ՀԱՂՊԱՏԻ ԴՊՐՈՑ, միջնադար. Հայաստանի ուսումնագիտ. և գրչության կենտրոն: Հիմնադրել է վանքի 1–ին վանահայր, գրիչ Սիմեոն վրդ–ը (X դ.): Հ. դ–ում են աշխատել գրիչներ Դավիթ Քորայրեցին (2 ընդօրինակություն, 1178, 1198, Մտնդ., ձեռ. № 2606, 5602, ևն), Մխիթար Քորայրեցին, գրչության ուսուցիչներ Իգնատիոսը և Կարապետը: Մտնդ–ում են պահվում նաև 1207, 1218, 1243, 1265–ին ընդօրինակված (№ 194, 1747, 4139, 4334) և այլ ձեռագրեր:

ՀԱՂՊԱՏԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, միջնադարում հայկ. ձեռագրերի ամենահարուստ ձեռագրատունը (հիմնադրվել է XI դ–ում): Հ. մ–ում պահվել են գրչագիր և երկաթագիր արժեքավոր մատյաններ, նաև «***Մաղնու Ավետարան***»–ը (այժմ՝ Մտնդ., ձեռ. № 7736): 1931–ին Հաղպատից ընդամենը 12 ձեռագիր է բերվել Երևան: Կորած ձեռագրերից առավել արժեքավոր էր Հաղպատի «Քոթուկը» (ավանդամատյանը):

ՀԱՂՊԱՏԻ ՎԱՆՔ, X դ–ի 2–րդ կեսի ճարտ. համալիր ՀՀ Լոռու մարզի Հաղպատ գ–ում: X–XIII դդ–ում հոգևոր և մշակույթի կենտրոն էր: Բաղկացած է Սբ Նշան (976–991), Սբ Գրիգոր (1025) և Սբ Աստվածածին (Խաթունաշեն, XIII դ.) եկեղեցիներից, գավթից (XIII դ–ի սկիզբ), ժամատնից (1257), գրատուն–մտնդ–ից (1258–62), զանգակատնից (1245), սեղանատնից (XIII դ.), մատուռ–դամբարաններից (XIII դ–ի 1–ին կես), խաչքարերից: Համալիրի գլխ. և հնագույն Սբ Նշան եկեղեցին (976–991) կառուցել է Խոսրովանույշ թագուհին: Հիմն. համալիրից դուրս են աղբյուրը (1258), Կուսանաց անապատը՝ Տիրամոր եկեղեցով (XIII դ.), Սբ Աստվածածին (Զգրաշեն), Սբ Սիոն (Առաջադեմ), Զորավարք (Սբ Գևորգ) եկեղեցիները (XII–XIII դդ.), Կայան ամրոցը՝ Դսեվանքի Սբ Աստվածածին եկեղեցով (1233), Զրաղացաձորի կամուրջը (XIII դ.) ևն:

ՀԱՃԱԽԱԶԱՐԿՈՒԹՅՈՒՆ, **տախիկարդիա** (< հուն. tachys – արագ և kardia – սիրտ), սրտի կծկումների հաճախացումը մինչև 100–180 զարկ 1 *ր*–ում: Առաջանում է ֆիզ. և նյարդ. լարվածության, սիրտանոթ. և նյարդ. համակարգերի, ներզատիչ գեղձերի հիվանդությունների դեպքերում: Տես նաև *Դանդաղազարկություն*:

ՀԱՃԱԽԱՄԻՋՈՒԹՅՈՒՆ, **պոլլակիուրիա** (< հուն. pollakis – հաճախ և uron – մեզ), միզարձակման հաճախացումը (ցերեկը՝ 4–5, գիշերը՝ 1 անգամ): Կարող է լինել ***միզուկաբորբի*** և այլ հիվանդությունների ախտանշան: Հաճախ ուղեկցվում է շատամիզության (պոլիուրիա) հետ:

ՀԱՃԱԽԱՅԻՆ ՄՈԴՈՒԼՈՒՄ, տրված օրենքով տատանումների հաճախության փոփոխություն՝ այդ տատանումներից ավելի փոքր պարբերականությամբ (տես ***Տատանումների մոդուլում***): Հ. մ–ման առավելությունն ամպլիտուդային մոդուլման համեմատությամբ՝ մեծ ***խանգարումակայունությունն*** է:

ՀԱՃԱԽԱՉԱՓ, տատանումների հաճախությունների չափման սարք: Օր.՝ մեխ. տատանումների հաճախությունը չափում են թրթռային և էլ. Հ–ներով, էլեկտրամագնիս. տատանումներինը՝ էլ. և էլեկտրոն. (ալիքաչափային) Հ–ներով:

ՀԱՃԱԽՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆՄՈՒՇ (ֆիզ., տեխ.), հասանելի ամենաբարձր ճշգրտություն ունեցող հաճախության չափ: Որպես Հ. չ.՝ ծառայում են էլ. տատանումների ***քվարցային գեներատորները***, դրանք կայունացվում են ***քվանտային գեներատորներով,*** որոնց մեջ օգտագործվում են Cs, Rb ատոմների կամ NH_3 մոլ–ի ***քվանտային անցումները***:

ՀԱՃԱԽՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊԻՉ, 1. (էլեկտրատեխ.) էլ. լարման (հոսանքի) հաճախության փոփոխման սարք: Օգտագործվում է տարբեր հաճախության փոփոխ. հոսանքի 2 և ավելի համակարգեր համաձայնեցնելու համար: 2. (Ռադիոտեխ.) ընդունվող ռադիոազդանշանի հաճախությունն այլ հաճախության օժանդակ տատանումների ներգործությամբ փոփոխող էլեկտրոն. սարք: Բաղկացած է խառնիչից և հետերոդինից:

ՀԱՃԱԽՈՒԹՅԱՆ ՔՎԱՆՏԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ (տեխ.), տատանումների հաճախությունների ճշգրիտ չափման սարքեր, որոնք հիմնված են մի էներգ. վիճակից մյուսին անցնելիս ատոմների, իոնների կամ մոլ–ների քվանտ. անցումների հաճախությունների (ԳԲՀ կամ օպտիկ. սպեկտրներում) չափման վրա:

ՀԱՃԱԽՈՒԹՅՈՒՆ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԻ (ֆիզ.), 1 *վ*–ում կատարած տատանումների թիվը. տատանումների ***պարբերության*** հակադարձ մեծությունն է: Պայման. նշանը՝ f կամ ν, չափման միավորը՝ *Հց*:

ՀԱՃԱՐ (Triticum spelta), դաշտավլուկազգիների (հացազգիներ) ընտանիքի ցորենի տեսակ՝ թեքվող առանցքով և կարմիր հատիկներով: ՀՀ–ում և Լ.ՂՀ–ում մշակում են կարմրահասկ (վաղահաս) և սպիտակահասկ տարատեսակները: Բերքատվությունը՝ 15–20 *ց/հա*:

ՀԱՃԱՐԵՆԻ (Fagus), **հաճարածառ, հաճարուկ, փեկոն**, հաճարազգիների ընտանիքի տերևաթափ բույսերի ցեղ: Հայտնի է 10 տեսակ՝ Հս. կիսագնդի արտաարևադարձ. շրջաններում, այդ թվում՝ 2–3–ը՝ Ղրիմում, Կովկասում և Արմ. Ուկրաինայում: ՀՀ–ում հանդիպում է 1 տեսակ (արլ.)՝ տարածված Լոռու, Տավուշի, հազվադեպ՝ Կոտայքի և Սյունիքի մարզերում: Առաջացնում են լեռն. անտառներ: Բնափայտն օգտագործվում է երաժշտ. գործիքներ, մանրատախտակ, ճկակահույք ևն պատրաստելու համար: Պտուղներից (ընկուզիկներ) ստանում են սննդի և տեխ. յուղ:

ՀԱՃՅԱՆ Մկրտիչ Շահենի (1915–1985), գրող, գյուտարար, երաժշտ. քննադատ, նկարիչ: 1952–57–ին ապրել է Ֆրանսիայում, ապա՝ Մեխիկոյում: Հեղինակ է «Վնատեացը» (1949), «Աստղահարը» (1982) պիեսների, նաև «Բոցեր» (1973), «Հողէն երկինք» (1977), «Վերջին հունձքը» (1991) բանաստեղծությունների ժող–ների: Նկարչ. գործերի (արստրակցիոնիստ.) անհատ. ցուցահանդեսներ՝ Մեխիկոյում, Նյու Յորքում, Բոստոնում, Երևանում:

ՀԱՃՅԱՆ Վահրամ (Ժոզեֆ) Եսայու (1935–2007), բանաստեղծ: Հեղինակ է «Ալ պանդուխտ չեմ» (1960), «Խօսք ցասման եւ յիշատակի» (1981), «Ճակատագիր» (1989), «Արցունքի աստղեր» (1991), «Իմ առավոտից գիշեր է ծորում» (1996), «Տիեզերք» (1999), «Ուրիշ միջոց չկար» (2002), «Իմ ընտրանին» (2005) և այլ քնար. բանաստեղծությունների, «Գնչուհին ճիշտ էր գուշակել» (2000) մանրապատումների ժող–ների:

ՀԱՃՆ, ք. Լեռն. Կիլիկիայում՝ Ադանայի նհնգ–ի հս–ում (այժմ՝ Թուրքիայի Ադանա վիլայեթում): Հ–ի հայերը դեռևս XI դ–ում հիմնադրել են Սբ Հակոբ վանքը (կանգուն է ցայսօր): Կիլիկիայի հայկ. պետության անկումից (1375) հետո մեծ թվով հայեր հաստատվել են Հ–ում: XV դ–ում Հ. զավթել է օսմ. Թուրքիան: 1915–ին ուներ 35 հզ. բն. (մոտ 30 հզ–ը՝ հայեր): Մեծ եղեռնի ժամանակ Հ–ի հայերը բռնությամբ տեղահանվել են և աքսորվել Դեյր էզ Զոր.

նրանց մեծ մասը զոհվել է: 1919–ին Հ. վերադարձած մոտ 8 հզ. հաճնցիներ 1920–ի մարտին կրկին ենթարկվել են թուրքերի հարձակմանը (տես *Հաճնի հերոսամարտ*): 1958–ին ՀԽՍՀ–ում հիմնադրվել է *Նոր Հաճն* քաղ:

ՀԱՃՆԻ ԲԱՐԲԱՌ, հայ–ի «կը» ճյուղի բարբառ: Խոսվել է Լեռն. Կիլիկիայի Հաճն ք–ում և մերձակա գյուղերում (Շար, Վահկա, Սիս, Քյութուն ևն): Հ. բ–ում ձայնեղները խլանում են (բ>պ), խուլերը՝ ձայնեղանում (պ>բ):

ՀԱՃՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է 1927–ին ԱՄՆ Ռոչեստր ք–ում (Նյու Յորքի նահ.): Միավորել է տարբեր երկրներում ապաստանած հաճնցիների ստեղծած հայրենակց. միությունները (կենտրոնը՝ Չիկագո): 1928–ից Մարսելում հրատարակվող «Հաճըն» ամսագիրը ճանաչվել է Հ. հ. ը. մ–յան պաշտոնաթերթ: 1933–ին միության կենտրոնը տեղափոխվել է Լոս Անջելես (այստեղ պաշտոնաթերթը վերահրատարակվել է «Նոր Հաճըն» վերնագրով), ապա՝ Բուենոս Այրես: Հ. հ. ը. մ–յան առաջարկությամբ և աջակցությամբ 1958–ին ՀԽՍՀ–ում հիմնադրվել է *Նոր Հաճն* քաս: 1972–ին միության նախաձեռնությամբ Նոր Հաճնում կանգնեցվել է *Հաճնի հերոսամարտին* նվիրված հուշարձան:

ՀԱՃՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏ 1920, Հաճն ք–ի բնակչության ինքնապաշտպ. մարտերը թուրք. կանոնավոր զորքերի դեմ: 1918–ին Կիլիկիայի վրա Անտանտի երկրների հսկողությունը հաստատվելուց հետո թուրք. զորքերը դուրս են բերվել այնտեղից, 8 հզ. հաճնցիներ վերադարձել են Հաճն: Սակայն 1920–ին՝ ֆրանս. զորքերի հեռանալուց հետո, քեմալականները վերագրավել են Կիլիկիան, սկսել հայ բնակչության կոտորածը: Հաճնցիները Կարապետ Չալյանի գլխավորությամբ դիմել են ինքնապաշտպ–յան (ապրիլի 10–հոկտ. 15): Սակայն թուրքերը գրավել են քաղաքը և կոտորել շուրջ 6 հզ. հայի: Միայն 365 հոգու է հաջողվել դուրս գալ շրջափակումից:

ՀԱՄ, զգացողություն, որն առաջանում է ողնաշարավորների լեզվում տեղակայված համային ընկալիչների վրա լուծվող տարբեր նյութերի ազդեցությունից: Հ. ազդում է ախորժակի և մարսողության վրա: Որոշ հիվանդությունների դեպքում այն կարող է խանգարվել:

ՀԱՄԱ, ք. Սիրիայի արմ–ում, համանուն մուհաֆազի վարչ. կենտրոնը: Բն.՝ 697 հզ. (2007):

ՀԱՄԱԲԱԼՈՒՅԻԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է 1934–ին՝ դեռևս XIX դ–ի վերջին և XX դ–ի սկզբին Բալուից և համանուն գվռ–ի գյուղերից ԱՄՆ գաղթած հայերի հայրենակց. խմբերի միավորումով: Կենտրոնը՝ Փրովիդենսում: Հ. հ. մ. մ–յան խնդրանքով ՀԽՍՀ ԳԽ 1968–ին Աբովյանի շրջանի (այժմ՝ ՀՀ Կոտայքի մարզ) Միուր գ–ը վերանվանել է Բալահովտի, որի հետ Հ. հ. մ. մ. ունի սերտ կապեր:

ՀԱՄԱԲԱՐԲԱՌ, 1. **Սուրբ Գրոց Հ.**, որոշակի կարգով կազմված բառարան–ցուցիչ, նպատակն Աստվածաշնչի գրքերում եղած փոխհամաձայնությունների, աստվածաշնչյան հասկացությունների ու բառերի՝ տարբեր համատեքստերում ունեցած ստույգ իմաստները բացահայտելն էր: Վաղագույնը Տատիանոս Ասորու «Համաբարբառ Ավետարանն» է: Հետագայում ստեղծվել են Եվսեբիոս Կեսարացու, հայ իրականության մեջ՝ Գևորգ Սկևռացու և ուր. Հ–ները: Լավագույնը Թադեոս վրդ. Աստվածատուրյանի «Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց»–ն (1895) է, որը ցայսօր օգտագործվում է ինչպես սուրբգրային, այնպես էլ հայագիտ. ուսումնասիրություններում: 2. Հեղինակի կամ նրա որևէ երկի բառապաշարն ընդգրկող բառացանկ՝ բառերի այբբեն. դասավորությամբ, համապատասխան բնագրային օրինակներով և գործածության տեղի նշումով: Կազմվել և հրատարակվել են գրաբարալեզու մի շարք հեղինակների (Եզնիկ Կողբացի, Ագաթանգեղոս, Մովսես Խորենացի, Գրիգոր Նարեկացի և ուր.) երկերի Հ–ները:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ, 1. **համաժողով**, խորհրդակցություն, որպես կանոն՝ միջազգ. բնույթի: 2. Որևէ խոշոր կազմ–յան ներկայացուցիչների, ազգաբնակչության խմբերի, որևէ բնագավառի գործիչների ժողով: 3. Մի շարք կազմ–յունների բարձրագույն մարմինը:

ՀԱՄԱԴ ԲԻՆ ԽԱԼԻՖԱ ԱԼ–ԹԱՆԻ (ծ. 1952), Քաթարի էմիր՝ 1995–2013–ին, վարչապետ՝ 1995–96–ին:

ՀԱՄԱԴ ԻԲՆ ԻՍԱ ԱԼ–ԽԱԼԻՖԱ (ծ. 1950), Բահրեյնի թագավոր՝ 2002–ից: 1999–2002–ին՝ էմիր, պաշտպ–յան նախարար՝ 1971–88–ին:

ՀԱՄԱԴԱ ԿՈՍԱԿՈՒ (1881–1938), ճապոնացի հնագետ: Պեղումներ է կատարել Կորեայում և Մանջուրիայում: Աշխ–ները վերաբերում են Արլ. Ասիայի հնագիտ–յանը:

ՀԱՄԱԴԱՆ, ք. Իրանի արմ–ում: Համանուն օստանի վարչ. կենտրոնը: Բն.՝ 473,1 հզ. (2006): Ավտոճանապարհների հանգույց է, առևտրի կենտրոն: Կան տեքստիլ, սննդի, փայտամշակման ձեռն–ներ: Զարգացած է գորգագործությունը: Հ–ում է Աբու Ալի իբն Սինայի (*Ավիցեննա*) դամբարանը:

ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ, համադաշնության և հավերժ միության հոդվածներ, ԱՄՆ 1–ին սահմանադր. փաստաթուղթը: Ընդունվել է 1777–ին 2–րդ մայրցամաք. համաժողովում, վավերացրել են բոլոր 30 նահգ–ները: Գործել է 1781–89–ին: Արտացոլել է 1775–83–ին Հս. Ամերիկայում *Անկախության պատերազմի* ձեռքբերումները, անգլ. նախկին գաղութներում հաստատել հանրապետ. կարգեր: Փոխարինվել են 1787–ին ընդունված ԱՄՆ Սահմանադրությամբ:

ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, լեզուների տիպաբան. խումբ (հին հայ., հին հուն., ռուս., արաբ., լատ. ևն), որտեղ որպես քերական. իմաստների արտահայտման հիմն. միջոցներ օգտագործվում են ներքին թեքումը, ածանցումը, բառարմատի կրկնությունները, բարդումը, զուգաձևությունները ևն:

ՀԱՄԱԴՐԵԼԻ ԳՆԵՐ, որևէ որոշակի տարվա (ամսաթվի) գներ, որոնք պայմանականորեն հիմք են ընդունվում դրամ. արտահայտությամբ տարբեր տարիների արտադր–յան, ապրանքաշրջանառության և այլ տնտ. ցուցանիշների ծավալները համադրելու համար: Անհրաժեշտությունը պայմանավորված է ապրանքների ու ծառայությունների գների փոփոխությամբ:

ՀԱՄԱԴՐԻԼ, **թիկնոցավոր կապիկ**, *պավիանների* ցեղի կապիկ: Մարմնի երկ.՝ 75–80 *սմ*, էգերը կրկնակի փոքր են: Ապրում է Աֆրիկայի (Եթովպիա, Սուդան, Սոմալի) և Ասիայի (Արաբական թ–կղզի) բաց տարածքներում:

ՀԱՄԱԵՐԿՆԱՅԻԱԿԱՆ ՎԵՐԱՇԻՆԱՅ ՄԻՈՒԹՅՈՒՆ, Երզնկայի գվռ–ի հայերի հայրենակց. միություն: Հիմնադրվել է 1934–ին Դետրոյտում (ԱՄՆ)՝ հայրենակց. խմբերի միավորումով: Նպատակը Հայաստանում Նոր Երզնկա ավան հիմնադրելն էր և այն երզնկացիներով բնակեցնելը: 1966–ին Աշտարակի շրջանում հիմնադրվել է Նոր Երզնկա ավանը (այժմ՝ Կոտայքի մարզում):

ՀԱՄԱԶԱՍՊ (Սրվանձտյան Համազասպ Խաչատուրի, 1873–1921), ազգ–ազատագր. շարժման գործիչ: Գարեգին *Սրվանձտյանի* եղբորորդին: Մասնակցել է 1905–06–ի հայ–թաթար. կռիվներին, 1906–ին կազմակերպել է Գանձակի հայության պաշտպյունը: ԱՀՊ–ի ժամանակ նշանակվել է 3–րդ կամավոր. գնդի հրամ.: 1918–ին մասնակցել է Բաքվի կոմունայի պաշտպյանը: 1918–ին վերադարձել է Հայաստան, մասնակցել ՀՀ (1918–20) ՋՈՒ կազմավորման աշխ–ներին: Հայաստանում խորհրդ. իշխանության հաստատումից հետո ձերբակալվել է և 1921–ի փետր–ին սպանվել Երևանի բանտում:

ՀԱՄԱԶԱՍՊ ԱՆԵՑԻ, XIII դ–ի հոգևոր և մշակույթի գործիչ, եպս.: 1242–ին հիշատակվում է որպես Հաղպատի վանքի առաջնորդ: 1245–ին կառուցել է Հաղպատի վանքի գավիթը, որը կոչվել է «Համազասպի շինք»: Հ. Ա. հիշվում է Հաղպատի՝ շուրջ երկու տասնյակ թվակիր ու անթվակիր արձանագրություններում: Հ. Ա. 1261–ին *Վարդան Արևելցուն* պատվիրել է գրել «Մեկնութիւն Հնգամատեանին» երկը, նաև Աստվածածնին, Գրիգոր Լուսավորչին, Հովհան Օձնեցուն նվիրված ներբողներ:

ՀԱՄԱԶԱՍՊ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ (ծ. թ. անհտ–661), Հայոց իշխան՝ 654–ից: Բյուզանդացի և արաբ նվաճողների դեմ պայքարում գործակցել է աներոջ՝ *Թեոդորոս Ռշտունու* հետ, որի հիվանդության պատճառով քաղ. ասպարեզը ժամանակավորապես լքելուց հետո Հ. Մ. գումարել է նախարար. համաժողով և փաստացի դարձել Հայոց իշխան: 656–ին դաշնակցել է Բյուզանդիայի հետ և պաշտոնապես ընտրվել Հայոց իշխան: Բյուզանդիայի կայսրը Հ. Մ–ին շնորհել է կյուրապաղատի տիտղոս, նրան նվիրել արծաթե գահ և իր զորքերը հանել Հայաստանից: Հ. Մ. վերամիավորել է գրեթե ողջ Հայաստանը: 661–ին վերսկսված արաբա–բյուզ. պատերազմների ժամանակ կրկին ընդունել է արաբ. գերիշխանությունը և երկիրը զերծ պահել ավերածությունից:

ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ Վարդգես Եղիշեի (1911–1992), հաս., կրթամշակութ. գործիչ: Պատմ. գիտ. թեկնածու (1948): 1948–51–ին՝ ՀԳՄ պատ. քարտուղար, 1951–64–ին՝ ՀՊՄԻ ռեկտոր, 1964–90–ին՝ *Սիյուքահայության հետ մշակութային կապի կոմիտեի* նախագահ: Աշխ–ները վերաբերում են Հայաստան–Սփյուռք հարաբերությունների պատմությանը: ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքանշաններ:

ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ–ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐ, հայ իշխան. տոհմ XI–XVII դդ–ում՝ *Սյունիների* տոհմից. տոհմանունն առաջացել է Համազասպ մարզպանի (XI դ–ի վերջ–XII դ–ի սկիզբ) անունից: Հ–մ–ին են պատկանել Տաշիր գավառի Մարց,

Քարինջ, Մշարդ, Աղեգի, Դսեղ (իշխանանիստ) գ–երը:

ՀԱՄԱԶԱՐԿ, միաժամանակյա կրակոց՝ բազմաթիվ միատեսակ հրազեններից (հրացան, հրանոթ ևն): Ողջունելիս և զինվ. պատիվ տալիս Հ–երն «անգնդակ» են (ոչ մարտ. փամփուշտներով):

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ, հիմնադրվել է 1991–ին Երևանում՝ Սոս ***Սարգսյանի*** նախաձեռնությամբ (մինչև 1999–ը հովանավոր՝ ՀՄՄ Հայաստանի վարչություն): Բեմադրվել են Ն. Սայմոնի «Սիրեկանը շիկացած անկողնում» (1994), Վ. Սարոյանի «Մի գավաթ բարություն» (1994), Կ. Մանիեի «Օսկար» (1995), Վ. Շեքսպիրի «Լիր արքա» (1996), Մոլիերի «Տարտյուֆ» (1998) և այլ պիեսներ: Տարբեր տարիների թատրոնում աշխատել են Մ. Ղարագյոզյանը, Շ. Ղազարյանը, Գ. Նովենցը, Կ. Ջանիբեկյանը, Ա. Էլբակյանը, Ա. Գալստյանը, Գ. Մեդրակյանը, Հ. Վանյանը, Հ. Գասպարյանը (գլխ. ռեժ.՝ 1995–ից), Դ. Հակոբյանը (նաև ռեժ.), 2016–ից՝ գեղ. ղեկ.՝ Վ. Չալդրանյան:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, մինչև 1990–ը՝ **Համազգային մշակութային միություն**, համահայկ. կազմ–յուն: Հիմնադրվել է Կահիրեում 1928–ին՝ «Հայ կրթական և հրատարակչական համազգային ընկերություն» անվանումով: Հիմնադիրներ՝ Համո ***Օհանջանյան***, Լևոն ***Շանթ***, Նիկոլ ***Աղբալյան***, Գասպար Իփեկյան և ուր.: Նպատակը հայկ. մշակույթի, դպրության զարգացմանն ու տարածմանը սատարելն էր: Միությունը 1930–ին Բեյրութում բացել է Հայ ճեմարանը (1988–ից՝ ***Մեսրոպեան և Հայկ Արսլանյան ճեմարան***), 1931–ին՝ «Հույս» (1967–ից՝ «***Վահէ Սեթյան***») տպարանը, 1941–ին՝ Համազգայինի թատերասերների միությունը, «Լևոն Շանթ» մշակութ. կենտրոնը, որը ներառում է «Թորոս Ռոսլին» կերպարվ–ի ակադ–ը, «Բարսեղ Կանաչյան» երաժշտանոցը, երգի և բալետի դպրոցները, 1974–ին՝ Հայագիտ–յան բարձրագույն հիմնարկը, 1980–ին՝ Մարսելի կրթ. կենտրոնը, 1986–ին Սիդնեյում՝ Արշակ և Սոֆի Գոլըստըն երկրորդ. վարժարանը, 1991–ին Երևանում՝ ***Համազգային թատրոնը*** ևն: Հ. հ. կ. և մ. մ–յան մասնաճյուղերն ունեն նաև մեկօրյա դպրոցներ:

Հ. հ. կ. և մ. մ–յան կենտր. վարչությանը (գրասենյակը՝ Բեյրութում) կից գործում են շուրջ 50 մասնաճյուղեր, տարբեր հանձնախմբեր: 1990–ից ՀՀ–ում գործում է միության վարչություն:

ՀԱՄԱԶԳՅԱՅ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, մշակութ. կազմ–յուն: Հիմնադրել է Մկրտիչ ***Պէշիկթաշլյանը*** Կ. Պոլսում 1846–ին: Գործել է մինչև 1852–ը: Անդամներից էին ***Տերեանցը***, Հովհաննես ***Հիսարյանը***, Հովսեփ ***Վարդանյանը*** և ուր.: Հիմնադրել է երկսեռ դպրոցներ, տպարաններ, հրատարակել գրքեր, հավաքել հայկ. ձեռագրեր, դրամներ ևն:

ՀԱՄԱԶՈՐ ՈՒԺ, տրված ուժային համակարգին համարժեք և այդ ուժերի $R = \Sigma F_k$ երկրչփ. գումարին հավասար ուժ: Մի կետում կիրառված ուժային համակարգը միշտ ունի Հ. ու., եթե $R \neq 0$:

ՀԱՄԱԺԱՄ ԿԻՆՈՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ, ձայնի միաժամանակյա գրանցմամբ կատարվող նկարահանում, որի դեպքում ձայնագրումը կատարվում է լուսանկարչ. կամ մագնիս. եղանակով՝ պատկերի նկարահանման կամ մեկ այլ կինոժապավենի ու մագնիս. ժապավենի վրա:

ՀԱՄԱԺԱՄ ՄԵՔԵՆԱ, փոփոխ. եռաֆազ հոսանքի էլ. մեքենա (գեներատոր, շարժիչ, ***փոխակերպիչ***), որի ռոտորի պտտման հաճախությունը էլեկտրացանցի հոսանքի հաճախության բազմապատիկն է:

ՀԱՄԱԺԱՄԱՅՆՈՂ ԿՅՈՒՐԴ, ֆիլմի ցուցադրման ժամանակ պատկերի և ձայնի համաժամ վերարտադրումն ապահովող սարքավորում, երբ ուղեկցող ձայնը ձայնագրվում է առանձին՝ մագնիս. ժապավենի վրա:

ՀԱՄԱԺԱՄԱՅՈՒՄ, ***սինքրոնացում*** (տեխ.), 2 կամ մի քանի շարժընթացների բերումն այնպիսի ընթացքի, երբ դրանց նույնատիպ կամ համապատասխան տարրերն ընթանում են ժամանակի ընթացքում չփոփոխվող տեղաշարժով կամ միաժամանակ:

ՀԱՄԱԼԲԱՇՅԱՆ Սարգիս Տաճատի (ծ. 1956), գեղանկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (2008): Կոմպոզիցիաներին բնորոշ են հայկ. մանրանկարչության ավանդույթների և աստվածաշնչ. մոտիվների վերաիմաստավորումները՝ հետմոդեռնիստ. արվ–ի ոճով ֆիգուրների գուն., խորհրդանշ. այլակերպումները («Փողոց № 165», «Որսորդական խնութ», երկուսն էլ՝ 1989, «Առաջին գալուստը», «Սա է օծյալը», երկուսն էլ՝ 1990, «Խորհրդավոր ընթրիք», 2002, ևն):

ՀԼԿԵՄ (1989), «Վահագն» համահայկ. մրցույթի (2002), ԹՄՄ (2005) մրց–ներ:

ՀԱՄԱԼԻՔ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ, հանք. նյութեր, որոնք պարունակում են բույսի սննդառության 2–3 հիմն. տարրեր, երբեմն՝ միկրոտարրեր: Լինում են պինդ և հեղուկ (ամոֆոս, նիտրաամոֆոսկ ևն), բարդ խառը (պատրաստի պարարտանյութերի, վերամշակված H_2SO_4–ի, HNO_3–ի, NH_3–ի խառնուրդներ) և խառը (պատրաստի պարարտանյութերի խառնուրդներ):

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ», գիտագր. ամսաթերթ (1899–1902, Փարիզ): Խմբ–ներ՝ Միսաք Պաղտասարյան, Հովհաննես Շավարշ (Մյուզմեճյան):

ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ, բարձրագույն ուսումնագիտ. հաստատություններ: Առաջիններն են XI դ–ում Իտալիայում հիմնադրված Բոլոնիայի իրավունքի և Սալեռնոյի բարձրագույն բժշկ. Հ.: XII–XIII դդ–ում Անգլիայում ստեղծվել են Օքսֆորդի և Քեմբրիջի (2–ն էլ՝ 1209), Ֆրանսիայում՝ Փարիզի (1215), Մոնպելիեի (1289), Իսպանիայում՝ Սալամանկայի (1218), Պորտուգալիայում՝ Լիսաբոնի (1290), XIV դ–ում Չեխիայում՝ Պրահայի (1348), Լեհաստանում՝ Կրակովի (1364), Ավստրիայում՝ Վիեննայի (1365), Գերմանիայում՝ Հայդելբերգի (1386), XV դ–ում Շվեդիայում՝ Ուփսալայի (1477), Դանիայում՝ Կոպենհագենի (1479) Հ.: Ռուսաստանում 1–ին՝ Ակադեմ. Հ. ստեղծվել է 1726–ին Ս. Պետերբուրգում, 1755–ին բացվել է Մոսկվայի, 1802–34–ին՝ Դորպատի, Խարկովի, Կազանի, Վարշավայի, Կիևի Հ.: ԱՄՆ–ում Հ. ստեղծվել են հիմնականում XIX դ–ում: 1919–20–ին բացվել է ***Երևանի պետական համալսարանը***:

Միջնադար. Հայաստանում գործել են բարձր տիպի դպրոցներ՝ գլխավորապես վանքերին կից, որոնք կոչվել են ուսումնարան, վարժարան, ճեմարան, համալսարան: Հայտնիներից են Վաղարշապատի դպրոցը (V դ.), Սյունյաց վարդապետարանը (V–IX դդ.), Տաթևի Հ. (IX–XV դդ.), Հաղպատի դպրոցը (X–XVI դդ.), Սանահինի Հ. (X–XIII դդ.), Գլաձորի Հ. (XIII–XIV դդ.), Մեծոփավանքի դպրոցը (XII–XV դդ.): XVI–XIX դդ–ում բարձր տիպի դպրոցներ են գործել Բաղեշում, Երևանում, Կարինում, Արմաշում և այլուր: XIX դ–ի հայ կրթության ու մշակույթի զարգացմանը մեծապես նպաստել են Մխիթարյան ակադ–ը (1717, Սբ Ղազար), Լազարյան ճեմարանը (1815, Մոսկվա), Ներսիսյան դպրոցը (1824, Թիֆլիս), Գևորգյան ճեմարանը (1874, Էջմիածին) և այլ կրթօջախներ:

ՀԱՄԱԼՈՒԾ ԹՎԵՐ (մաթ.), $z = x + iy$ և $z = x - iy$ տեսքի թվեր, որտեղ $i = \sqrt{-1}$ –ը ***կեղծ միավոր*** է:

ՀԱՄԱԼՈՒԾ ԿԵՏԵՐ (ֆիզ.), օպտիկ. համակարգի համեմատությամբ օբյեկտ և նրա պատկերը հանդիսացող 2 կետեր: Լուս. ճառագայթների դարձելիության հետևանքով օբյեկտը և պատկերը կարող են իրենց տեղերը փոխադարձորեն փոխել: Հ. կ. խստորեն կիրառելի են միայն իդեալ. օպտիկական համակարգերում, որտեղ խոտորումները բացակայում են:

ՀԱՄԱԽՄԱՌՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ, ազգ. եկամտի վիճակագր. ցուցանիշ ազգ. հաշիվների համակարգում: Կապված է ***համախառն ներքին արդյունքի*** հետ: Արտահայտում է երկրում արտադրված վերջն. ապրանքների ու ծառայությունների ամբողջ. արժեքը: Ներառում է բնակչության սպառած վերջն. ապրանքների և ծառայությունների արժեքը, պետ. գնումները, կապիտալ ներդրումները և վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդը: Ի տարբերություն ՀՆԱ–ի՝ ներառում է նաև արտերկրից ստացված մաքուր եկամուտները:

ՀԱՄԱԽՄԱՌՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ, վիճակագր. ցուցանիշ. բնութագրում է տնտ–յան, նրա ճյուղերի և ձեռն–ների արտադրանքի ծավալը՝ դրամ. արտահայտությամբ: Ցույց է տալիս նյութ. արտադր–յան ոլորտում կենդանի և առարկայացած աշխ. ծախսումների ծավալը:

ՀԱՄԱԽՄԱՌՆ ԵԿԱՄՈՒՏ, ձեռն–յան դրամ. հասույթը, որն ստացվում է ապրանքների ու ծառայությունների իրացումից՝ նյութ. ծախսերը հանած:

ՀԱՄԱԽՄԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ (ՀՆԱ), ազգ. եկամտի վիճակագր. ցուցանիշ ազգ. հաշիվների համակարգում. բնութագրում է տվյալ երկրի տարածքում արտադրված ապրանքների ու ծառայությունների ամբողջ. արժեքը: Իր բնաիրային տեսքով ՀՆԱ տվյալ ընթացքում սպառման ու կուտակման համար օգտագործված ապրանքների ու ծառայությունների ամբողջությունն է:

ՀԱՄԱԽՄԱՌՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ, որոշակի ժամանակահատվածում ձեռն–յան (ձեռն–ների խմբի), վտմ–ի կամ ամբողջ երկրի տնտ. գործունեության վերջն. արդյունքները բնութագրող ամփոփ ցուցանիշներ: Օգտագործում են տնտ. աճի տեմպերի բնութագրման համար՝ որպես կառավարման կիրառվող համակարգի արդյունավետության գնահատման չափանիշներ: Ձեռն–յան գործունեության կարևորագույն Հ. ց. են ***համախառն արտադրանքը*** և ***համախառն եկամուտը***: Տարածաշրջանի մակարդակի համար հաշվարկվում է ***համախառն տարածաշրջանային արդյունքի*** ցուցանիշը: Երկրի տնտ. զարգացման մակարդակն ընդհ.

առմամբ բնութագրում են ***համախառն ներքին արդյունքն*** ու ***համախառն ազգային եկամուտը:***

ՀԱՄԱԽՄԲԵՐԴՅԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, խարբերդցի հայերի հայրենակց. միություն: Հիմնադրվել է 1926-ին Բոստոնում (ԱՄՆ): Նպատակը ՀԽՍՀ-ում *Նոր Խարբերդ* ավան հիմնելն էր: 1928-ին ՀԽՍՀ ՆԽ որոշմամբ ավանի կառուցման համար Երևանի մերձակայքում հատկացվել է տարածք, որտեղ բնակություն են հաստատել ներգաղթած խարբերդցիները:

ՀԱՄԱԽՏԱՆԻՇ, սինդրոմ (հուն.՝ syndrome – կուտակում), միասնական ախտածնությամբ պայմանավորված ախտանշանների օրինաչափ զուգորդությունը. դիտվում է որպես ինքնուրույն հիվանդություն (օր.՝ Մենյերի) կամ որպես որևէ հիվանդության փուլ (ձև) (օր.՝ նեֆրոտիկ Հ., միզարյունությունը՝ քրոնիկ. երիկամաբորբի ժամանակ):

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, մեթոդաբան. հնարքների ամբողջություն. օգտագործվում է քաղ., ռազմ., սոցիալ., տնտ., գիտ., տեխ. բնույթի բարդ խնդիրների հիմնավորման համար: Հ. վ. հիմնվում է համակարգային մոտեցման, ինչպես նաև մաթ. գիտակարգերի և կառավարման ժամանակակից մեթոդների վրա: Հ. վ-յան հիմն. գործընթացն ընդհանրացված մոդելի կառուցումն է, որն արտացոլում է իրավիճակի փոխադարձ կապերը: Հ. վ-յան տեխ. հիմքը հաշվիչ մեքենաներն ու տեղեկատվ. համակարգերն են: 1950-ական թթ-ից կիրառվում է տնտ-յան, կառավարման և այլ ոլորտներում: «Հ. վ.» հասկացությունը հաճախ օգտագործվում է իբրև համակարգ. մոտեցման հոմանիշ:

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ, էլեկտրոնիկայի օգտագործմամբ տեխ. և ծրագր. համալիր միջոցներ, որոնք նախատեսված են հաշվող., տեղեկատվ. և այլ խնդիրների լուծման ընթացքում տվյալների ավտոմատ կամ ավտոմատացված մշակման համար: Դասակարգվում են՝ ըստ **սերունդների** (1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ), ըստ **գործողության և կառուցվածքի** (թվային, անալոգ., համակցված, բազմաշարժընթաց., փոխադրահամակարգիչներ), ըստ **նշանակման** (անհատական, սերվեր, մենֆրեյմ, բորտահամակարգիչ):

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՎԻՐՈՒՍՆԵՐ, ծրագրերի դաս, որոնք ինքնակամ ներթափանցում են աշխ. ծրագրի մեջ և ձևափոխում այն՝ առաջացնելով ծրագրի աշխ-ի խանգարումներ, ոչնչացնում տվյալները կամ խեղաթյուրում դրանք են: Հ. վ. լինում են **բեռնումային, ֆայլային** և **բազմակողմանի** (խաթարում է համակարգչի գործունեության համակարգի որևէ մասը):

ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՃԱՄԲԱՐ, պետության, քաղ. ռեժիմի իրական և ենթադրական հակառակորդների ստիպող. մեկուսացման ճամբարներ: Ի տարբերություն բանտերի, ռազմագերիների և փախստականների ճամբարների՝ Հ. ճ-ները ստեղծվել են հատուկ հռչակագրերով՝ քաղ. իրավիճակի սրման պայմաններում:

1-ին Հ. ճ. կազմակերպել են իսպանացիները 1895-ին՝ Կուբայում ազատագր. ապստամբությունների սկզբին, անգլիացիները՝ անգլո-բուրական պատերազմի ժամանակ՝ 1899–1902-ին, Ռուսաստանում՝ 1918-ին՝ «Կարմիր ահաբեկչության մասին» որոշումով: Ֆաշիստ. Գերմանիայում Հ. ճ-ները վերածվել են պետ. զանգված. ահաբեկչության և ցեղասպանության գործիքի, տարածվել նաև նվաճված երկրներում: Բուխենվալդի, Զաքսենհաուզենի, Օսվենցիմի, Մայդանեկի, Տրեյբլինկայի և այլ Հ. ճ-ներում ոչնչացվել է ավելի քան 11 մլն մարդ:

ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ, սիմբիոզ (հուն.՝ symbiosis – համակեցություն), տարբեր տեսակի 2 օրգանիզմների համակեցության ձև, երբ նրանք (սիմբիոնտներ) անմիջական փոխազդեցության մեջ են մտնում արտաքին միջավայրի հետ և վերջինիս հետ հարաբերությունների կարգավորումն իրականացնում համատեղ: Լայն իմաստով՝ Հ. ընդգրկում է տարբեր տեսակների օրգանիզմների համակեցության բոլոր ձևերը՝ ներառյալ նաև մակաբուծականությունը (անտագոնիստ. Հ.): Հ. հաճախ փոխշահավետ է 2 սիմբիոտների համար (փոխադարձ Հ., օր.՝ ճգնավոր խեցգետնի և ակտինիայի միջև, կենդանու և բնականոն աղիք. միկրոֆլորա ձևավորող միկրոօրգանիզմների միջև ևն):

ՀԱՄԱԿՑՎԱԾ ԿԵՐ, հացահատիկ. հումքի խառնուրդ, գղտ. կենդանիների համար սպիտակուցի, վիտամինների և միկրոտարրերի բարձր պարունակությամբ արտադրանք:

ՀԱՄԱԿՑՎԱԾ ԿԻՆՈՆԿԱԲԱՀԱՆՈՒՄ, *կինոնկարահանման* մեթոդներ, եղանակներ, ձևեր, որոնք հնարավորություն են տալիս մի պատկերում միավորել տարբեր տեղերում և ժամանակներում, նաև տարբեր մասշտաբ. հարաբերությամբ ու տարած. դիրքով նկարահանված օբյեկտներ:

ՀԱՄԱԿՑՎԱԾ ՕԴԱՀՐԹԻՆԱՅԻՆ ՇԱՐԺԻՉ (տեխ.), օդառեակտիվ և հրթիռ. շարժիչների հիմն. տարրերից օրգ. համակցումով կազմված շարժիչ: Դրանցից են մասնավորապես հրթիռ. և հրթիռաուղղահաոս շարժիչները:

ՀԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱՎՃԻՌՆԵՐԻ, երկու կամ ավելի դատավճռի կայացումը մեկ անձի նկատմամբ: Հ. դ-ով պատիժ նշանակվում է այն անձանց նկատմամբ, ովքեր նախկինի պատիժը կրելիս կատարել են նոր հանցագործություն: Հաշվի առնելով վտանգավորությունը՝ այդ հանցագործությունների համար պատժի նշանակման ավելի խիստ կարգ է սահմանվում, քան մի քանի հանցագործություն կատարած, սակայն առաջին անգամ քր. պատասխանատվության ենթակա անձի նկատմամբ:

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ (լեզվաբ.), բառերի շարահյուս. կապակցության եղանակ, երբ ստորադաս բառն ընդունում է գերադասի քերական. հատկանիշները: Հ-յամբ կապակցվում են ենթական և ստորոգյալը, բացահայտիչն ու բացահայտյալը:

ՀԱՄԱՁՈՒԼՎԱԾ-ՔՆԵՐ մետաղների, միահալույթներ, մակրոսկոպիկ համասեռ համակարգեր՝ կազմված 2 կամ ավելի մետաղներից (հազվադեպ՝ մետաղներից և ոչ մետաղներից)՝ բնորոշ մետաղ. հատկություններով: Լայն իմաստով՝ Հ. են մետաղների, ոչ մետաղների, օքսիդների, սուլֆիդների, օրգ. նյութերի ևնի միահալումից առաջացած համասեռ համակարգերը: Ոչ մետաղ. Հ. են լեռն. ապարները (գրանիտ, բազալտ ևն), սիլիկատ. ապակին, որոշ ոչ մետաղ. նյութեր (շլակներ, ֆլյուսներ ևն):

ՀԱՄԱՃԱՐԱԿ, էպիդեմիա (հուն.՝ epidemia), մարդու վարակիչ հիվանդության զանգված. տարածումը որևէ վայրում, երկրում, որը գերազանցում է հիվանդացության սովոր. մակարդակը:

ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ, վարակիչ հիվանդությունների հարուցիչների տարածման աղբյուրների, ուղիների և գործոնների հայտնաբերման մեթոդ՝ հակահամաճարակ. առավել արդյունավետ միջոցառումների ընտրության նպատակով:

ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՎԻՐՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱԿԱԲՈՒԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ հայկական գիտահետազոտական, Արտո Ալեքսանյանի անվան, հիմնադրվել է 1923-ին (մինչև 1971-ը՝ տարբեր անվանումներով): Զբաղվում են մալարիայի, բնական ծաղիկի, խոլերայի, հետադարձ և բծավոր տիֆերի, լեյշմանիոզների, այնուհետև՝ որովայն. տիֆի, սուր աղիք. վարակիչ հիվանդությունների, դիֆթերիայի, պոլիոմիելիտի, կապույտ հազի, կարմրուկի, հելմինթոզների, գրիպի և այլ հիվանդությունների ախտորոշման, կանխարգելման և պայքարի միջոցառումների մշակման հարցերով: Տնօրենները՝ Ն. Հակոբյան, Խ. Արխիպյանց, Մ. Քեշիշյան, Ե. Կարապետյան, Բ. Փիրումով, Բ. Ավետիքյան, Բ. Աստվածատրյան, Ա. Գալստյան, Մ. Մելիք-Քարամյան, Ա. Ծատուրյան, Հ. Հովհաննիսյան, Գ. Պապովյան, Ա. Զաքարյան, Կ. Դեղձունյան, Յ. Ալեքսանյան, Գ. Մելիք-Անդրեասյան (2007–ից): ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան (1973):

ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, էպիդեմիոլոգիա, բժշկագիտ-յան բնագավառ. ուսումնասիրում է մարդկային հաս-յան մեջ վարակիչ հիվանդությունների ծագման ու տարածման օրինաչափությունները, մշակում պայքարի միջոցառումներ: Ժամանակակից գրկ-յան մեջ «Հ.» եզրույթը կիրառվում է նաև ոչ վարակիչ (սիրտանոթային, հոգեկան ևն) տարածված հիվանդությունների համար:

ՀԱՄԱՄ ԱՐԵՎԵԼՅԻ, Համամ Բագրատունի, Համամ Բարեպաշտ, Համամ-Գրիգոր, IX դ-ի 2-րդ կեսի իշխան, ապա՝ Հայոց Արևելից կողմանց թագավոր, քերական, մեկնիչ: Բագրատունիների թագավորության ենթակա Հ. Ա-ու թագավորությունն ընդգրկել է *Վաչագան Գ Բարեպաշտի* թագավորության ողջ տարածքը (Արցախ, Ուտիք, Կամբեճան): Պահպանվել է Հ. Ա-ու 2 արձանագրություն՝ «Գրիգոր Ադրներսեհեան» – «Ադրնարսեհի որդի» (Մեծ Սազրայում) և «Համամ» (Տիգրանակերտի ավերակների մոտակա Սոֆուլու գ-ում): Հեղինակ է «Հարցմունք եւ պատասխանիք» (856–865) և այլ գործերի, մեկնությունների, շարականների:

ՀԱՄԱՄՈՒՅՆ, ք. Ճապոնիայի Սիձուոկա պրեֆեկտուրայում՝ Հոնսյու կղզում: Բն.՝ 791,4 հզ. (2014): 1991-ից Հ-ում անցկացվում է դաշնակահարների միջազգ. մրցանակաբաշխություն:

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՀամԼԿԵՄ), երիտասարդ. հաս-քաղ. կազմ-յուն ԽՍՀՄ-ում: Ստեղծվել է 1918-ի հոկտ. 29-ին՝ բանվորների և գյուղացիների երիտասարդ. միությունների 1-ին համառուսաստանյան համագումարում (Ռուսաստանի կոմերիտ. երիտասարդ. միություն): 1924-ից՝ Վ. Ի. Լենինի անվ.: 1926-ից կոչվել է ՀամԼԿԵՄ: Գործունեությունը դադարեց-

րել է 1991-ի սեպտ-ին՝ ՀամԼԿԵՄ 22-րդ արտահերթ համագումարի որոշմամբ:

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, ԽՍՀՄ-ում 10–15 տարեկան դպրոցականների կազմ-յուն ՀամԼԿԵՄ-ին կից: Ստեղծվել է 1922-ին: 1924-ի հունվ-ին կոչվել է Վ. Ի. *Լենինի* անունով: Գործել է մինչև 1991-ը:

ՀԱՄԱՄՋՅԱՆ Մելինե Հմայակի (1922–1999), դերասանուհի: ՀՀ ժող. արտիստ (1984): 1943-ից՝ ԵԿԹ դերասանուհի (Մարթա, Շողակաթ՝ Հ. Պարոնյանի «Ատամնաբույժն արևելյան», «Մեծապատիվ մուրացկաններ», Մինադորա՝ Շ. Ջոջուայի «Երկու օրիորդ», Փեփրոնե՝ Ա. Պապայանի «Փարիզեցի փեսան», ևն): Խաղացել է նաև հեռուստաթատրոնում, նկարահանվել կինոյում («Ձախորդ Փանոս», 1969, «Կտոր մը երկինք», 1986, «Ընկեր Փանջունի», 1992, բոլորը՝ Հայֆիլմ):

ՀԱՄԱՄՋՅԱՆ Միքայել Գրիգորի (ծ. 1944), ճարտարագետ: Տեխ. գիտ. դ-ր (2003): «Հայճենապակի» ԲԲԸ նախագահ և գլխ. տնօրեն (1995–99): Ճենապակու արտադր-յան մեջ որպես գունանյութեր օգտագործել է հայկ. քարերի փոշին, ստեղծել է հայկ. նուրբ ճենապակի: Աշակել և կառուցել է եռախցիկ վառարան՝ Հայաստանում հիմնադրելով ոսկրային ճենապակու արտադր-յուն, նախագծել և կառուցել է Հադրութի խեցեղենի արտադրամասը, տեղական կարմիր կավի հումքով գործող «Հայճենապակի» կոմինդղի գործարանը:

ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ, *համապատկեր*, արվ-ի տեսակ: Գլանաձև ենթաշրջանակի ներսի մակերեսին ձգված ժապավենաձև նկարաշար՝ համադրված նրա առջևում շրջանաձև տեղադրված «առարկայական» պլանի հետ (արհեստ. և բնական առարկաներ, շինություններ ևն): Հ. սովորաբար տեղադրվում է հատուկ կառուցված շենքի շրջանաձև դահլիճում և դիտողին շրջապատող իրական տարածության պատրանք է ստեղծում: Առաջին Հ. ստեղծել է իռլանդացի գեղանկարիչ Ռ. Բարքերը (XVIII դ-ի վերջ): Հայտնի են «Սևաստոպոլի պաշտպանությունը» (բացվել է 1905 և 1954-ին Սևաստոպոլում), «Բորոդինոյի ճակատամարտը» (բացվել է 1912 և 1962-ին Մոսկվայում, երկուսն էլ՝ Ֆ. Ա. Ռուբոյի) Հ-ները:

«ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ», գր-մշակութ. հանդես (1999-ից, Լոս Անջելես): Հիմնադիր-խմբ.՝ Սարո *Գյոդակյան*:

ՀԱՄԱՅՆՔ, 1. հաս. կազմ-յան ձև՝ կազմավորված նախնադար. հասարակարգում: Գոյատևել է մինչև կապիտալիզմի ձևավորումը: 2. Տեղ. ինքնակառավարվող վտմ ՀՀ-ում: Որպես ինքնակառավարվող միավոր կազմակերպվել է 1995-ին: Ընդգրկում է 1 կամ ավելի թվով բնակավայրեր, խոշոր քաղաքներում՝ նաև թաղամասեր (թաղային Հ.): Հ-ները ներառվում են համապատասխան մարզի մեջ: ՀՀ-ում կա 915 Հ., որից 866-ը՝ գյուղ. (2016): 3 տարի ժամկետով ընտրվում են ինքնակառավարման մարմիններ՝ ավագանի: Հ. են կոչվում նաև ընդհ. հետաքրքրություններով միավորված մարդկանց կազմ-ներ՝ կրոն., հայրենակց., ազգ. փոքրամասնության, քաղաք. ևն: Սփյուռքում ստեղծվել են հայկ. Հ-ներ:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱԼԱՏ, Մեծ Բրիտանիայի և Կանադայի խորհրդարանի ստորին պալատը:

ՀԱՄԱՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ, **անալոգիա** (հուն.՝ analogia – համապատասխանություն), 1. իրավունքում օրենքով չնախատեսված, բայց իրական կարգավորում պահանջող հարաբերության վճռումն օրենսդրության համանման նորմով կամ իրավունքի ընդհ. սկզբունքով: Վճիռը կայացվում է այն օրենքով, որը պարունակում է առավել նման հարաբերության կարգավորում (օրենքի Հ.), կամ իրավունքի ընդհ. սկզբունքների հիման վրա (իրավունքի Հ.): Հ. հազվադեպ է կիրառվում, հիմնականում՝ քաղաքաց., տարածք. և աշխ., դատ. գործերի ժամանակ:

2. Առարկաների (երևույթների, գործընթացների) նմանությունը որևէ հատկությամբ: Հ-յամբ ստացված մտահանգումները, որոնք ձեռք են բերվում որևէ օբյեկտի դիտարկման արդյունքում, փոխադրվում են պակաս ուսումնասիրված, էական հատկանիշներով, որակներով նման օբյեկտին, դառնում են գիտ. վարկածների աղբյուր: Կեցության Հ. կաթոլիկ. սխոլաստիկայի հիմն. սկզբունքներից է Աստծու կեցության ճանաչողության հնարավորությունը, հիմնավորում է նրա արարած աշխարհի կեցությունով:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿ, միջազգ. առաջատար ֆին. կազմ-յուն. բաղկացած է միմյանց հետ կապված 5 կառույցից՝ Վերակառուցման և զարգացման միջազգ. բանկ, Միջազգ. ֆին. կորպորացիա, Զարգացման միջազգ. ասոցիացիա, Ներդրումների երաշխավորման բազմակողմ գործակալություն և Ներդրումային վեճերի կարգավորման միջազգ. կենտրոն: Կենտրոնատեղին՝ Վաշինգտոնում:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿ (UT1), սկզբն. (զրոյական) միջօրեականի միջին *արեգակնային ժամանակը*: Սկզբն. միջօրեականի փոխարեն պայմանականորեն օգտագործում են Գրինվիչի աստղադիտարանի միջօրեականը:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ԺԱՄԱՆԱԿ (UTC), ժամանակի հաշվարկի համակարգ, որի հիմքում ատոմ. ժամացույցի ցուցմունքն է, իսկ թվային արժեքն ընտրվում է այնպես, որ նրա և *համաշխարհային ժամանակի* միջև տարբերությունը չգերազանցի 0,9 *վ*-ն: Ժամանակի ծառայությունների ճիշտ ժամանակի ազդանշանը համապատասխանում է Հ. հ. ժ-ի սանդղակին:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀՈԳԻ, իդեալիստ. փիլ-յան և աստվածաբանության հասկացություն. նշանակում է Տիեզերքը կենդանացնող, զգայունակության ու ճանաչելու հատկությամբ օժտված միասնական և ակտիվ նախասկիզբը: Նորպլատոնականության հիմն. հասկացություններից է, որի ակունքներում Պլատոնի ուսմունքն է Հ. հ-ու (աննյութ.՝ իդեալ. և զգայական աշխարհների միջնորդավորող, Տիեզերքի շարժիչ ուժ) մասին: Հ. հ-ու մասին ուսմունքն ընդունել են Վերածննդի ժամանակաշրջանի համապսիխիզմի (իտալացի նորպլատոնականներ, Ջ. Բրունո), գերմ. ռոմանտիզմի և XIX դ-ի իդեալիստ. փիլ-յան (Ֆ. Շելլինգ, Գ. Ֆեխներ, Է. Հարթման) ներկայացուցիչները:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱ, ապրանքների և ծառայությունների միջազգ. փոխանակության ոլորտ, որի հիմքում աշխ-ի միջազգ. բաժանումն է: Նեղ իմաստով՝ առանձին երկրների շուկաների ամբողջություն, որոնք միմյանց հետ կապված են առևտրատնտ. հարաբերություններով: Հ. շ-ի զարգացման աստիճանն արտացոլում է արտադր-յան միջազգայնացման մակարդակը:

ՀԱՄԱԶԽԱՐՀԱՅԻՆ ՁՐՀԵՂԵՂ, Աստծու պատիժը մարդկության և երկրի վրա ողջ գոյավորի՝նկատմամբ՝ սուրբ տեքստերում և դից-յան մեջ: Ըստ Աստվածաշնչի՝ Հ. ջ-ի ժամանակ փրկվել են *Նոյ*՝նահապետն ու իր ընտանիքը, որոշակի քանակությամբ և տեսակի կենդանիներ: Հ. ջ-ի մասին հիշատակվում է՝նաև *«Գիլգամեշ»* էպոսում:

ՀԱՄԱԶԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, աշխարհի երկրների ազգ. տնտ-յունների ամբողջությունը, որը դրսևորվում է տնտ. փոխադարձ կապերի (փոխհարաբերությունների) տեսքով: Ձևավորվել է առևտրի միջազգայնացման հետևանքով և համակարգի բնույթ է ձեռք բերել խոշոր մեք. արտադր-յան հիման վրա (XIX դ-ի վերջ–XX դ-ի սկիզբ): Ժամանակակից Հ. տ-յան զարգացման որոշիչ գործոններն են գիտատեխ. առաջընթացը, անցումը բարձր տեխնոլոգիաներին, ազգ. տնտ-յունների փոխադարձ կապերի ածը, արտաքին տնտ. կապերի ազատականացումը ևն:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՀՓՄ), միջազգ. միջկառավար. կազմ-յուն, ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալություն (1947-ից): Հիմնադրվել է 1874-ին. ապահովել է միջազգ. փոստ. ծառայության կազմակերպման և կատարելագործման աշխ-ները: Նստավայրը՝ Բեռն: ՀՓՄ-ին անդամակցում է 192 պետություն (2014), այդ թվում՝ ՀՀ-ն (1992-ից): Գլխ. տնօրենը՝ Բ. Ա. Հուսեյն (2013-ից):

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՕԿ), ՄԱԿ-ի մասնագիտացված միջազգ. գործակալություն՝ 1951-ից, 1873–1951-ին՝ Միջազգ. օդերևութաբան. կազմ-յուն: Նպատակն օդերևութաբան. դիտարկումների ոլորտում միջազգ. համագործակցության համակարգումն է, տեղեկատվության արագ փոխանակմանը նպաստելը և վիճակագր. տվյալների հրատարակումը: Նստավայրը՝ Ժնև: ՀՕԿ-ին անդամակցում է 191 պետություն, այդ թվում՝ ՀՀ-ն (2014):

ՀԱՄԱԶԱՓ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ, մի քանի փոփոխականի ֆունկցիաներ, որոնք չեն փոխվում այդ փոփոխականների որևէ տեղափոխության դեպքում: Հանրահաշվում կարևոր նշանակություն ունեն համաչափ բազմանդամները:

ՀԱՄԱԶԱՓԵԼԻ ԵՎ ԱՆՀԱՄԱԶԱՓԵԼԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ, համապատասխանարար ընդհ. չափ ունեցող կամ չունեցող 2 համասեռ մեծություններ, օր.՝ անհամաչափելի մեծություններ են քառակուսու անկյունագծի և կողմերի երկ-յունները:

ՀԱՄԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ, որոշակի փոփոխության (ձևափոխության) նկատմամբ օբյեկտի անփոփոխ մնալու հատկություն: Լայն առումով՝ Հ. որոշակի կառուցվածք է, համակարգի կազմակերպվածություն, նրա տարրերի կարգավորվածություն, մասերի ներդաշնակ միավորում ամբողջի մեջ: Երկրչփ. օբյեկտները համարվում են համաչափ, եթե որոշակի ձևափոխություններից հետո համընկնում են իրենք իրենց հետ: Երկրչփ. Հ-յան հատկությունները կարևոր են բյուրեղների Հ. ուսումնասիրելու համար (տես *Բյուրեղագիտություն*): Այն օրթոգոնալ ձևափոխությունները,

որոնք որևէ պատկեր համատեղում են ինքն իր հետ, կազմում են խումբ և կոչվում տվյալ կառուցվածքի Հ–յան խումբ:

Գոյություն ունեն նաև Հ–յան ոչ բացահայտ գծեր, որոնք կիրառվում են ֆիզիկայի տարբեր բնագավառներում, հատկապես՝ ***տարրական մասնիկների ֆիզիկայում***: Ֆիզիկայի օրենքները համաչափ են: Դրանք համաչափ են նաև հաշվարկային ***իներցիալ համակարգերում*** (տես ***Հարաբերականության սկզբունք***): ***Քվանտային մեխանիկայում*** բացահայտվել են Հ–յան նոր տեսակներ, մասնավորապես՝ տարած. ինվերսիան (P), լիցքի համալուծությունը (C), T–ի ինվերսիան և դրանց համակցությունը (CPT–Հ.): Արդի ֆիզիկայում մեծ տեղ է հատկացվում տրամաչափված Հ–յանը (դաշտի քվանտ. տեսության շարժման հավասարումների Հ–ների ընդհ. դասի անվանումը), որը հնարավորություն է տալիս միավորելու թույլ և էլեկտրամագնիս. փոխազդեցությունները:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ, սկզբունք, որի համաձայն՝ ֆիզ. իրականության ավելի ընդհ. ու նոր նկարագրության հավակնող ամեն մի նոր տեսություն, իբրև սահման. դեպք, պետք է պարունակի հին տեսությունը: ***Քվանտային մեխանիկայում*** Հ. ս. առաջարկել է Նիլս *Բորը* 1923–ին: Ըստ Բորի սկզբունքի՝ մեծ քվանտ. թվերով վիճակներում քվանտ. օրինաչափությունները վերածվում են դասականի: Համանման ձևով V/C = 0 սահման. դեպքում (V–ն մարմնի շարժման արագությունն է, C–ն՝ լույսի արագությունը վակուումում) ***ռելյատիվիստական մեխանիկայի*** օրենքները համընկնում են նյուտոնյան մեխանիկայի օրենքներին:

ՀԱՄԱՊՈԼԻՄԵՐՆԵՐ, ***պոլիմերներ***, որոնց մոլ–ները պարունակում են տարբեր քիմ. բաղադրության մոնոմերների շղթաներ: Մի շարք սինթետիկ Հ–ի համար (օր.՝ բութադիեն–ստիրոլ. կաուչուկներ) բնութագրական է տարր. օղակների պատահական դասավորությունը: Նուկլեինաթթուների և սպիտակուցների մեծամասնության մոլ–ները պարունակում են օղակների որոշակի հաջորդականություններ, որոնք ապահովում են այդ Հ–ի կենսբ. առանձնահատկությունը:

ՀԱՄԱՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ (ՀԱՀ), հակահեղ–յան և սաբոտաժի դեմ պայքարի հատուկ մարմին 1917–22–ին: Ստեղծվել է 1917–ի դեկտ–ին՝ Ֆ. Է. ***Ձերժինսկու*** գլխավորությամբ: 1918–ին ստեղծվել են ՀԱՀ–ի տեղական՝ նահանգ., գավառ., տրանսպորտ., բանակ. արտակարգ հանձնաժողովներ: Իրականացրել է զանգված. բռնություններ (***Կարմիր տեռոր***):

ՀԱՄԱՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵ, օրենսդիր, կարգադրիչ և վերահսկիչ ԳՄ ՌԽՍՖՀ–ում 1917–37–ին: Ընտրվել է Խորհուրդների համառուսաստանյան համագումարներում: Մինչև ԽՍՀՄ կազմավորումն ընդգրկել է նաև Ուկր. ԽՍՀ և Բել. ԽՍՀ ներկայացուցիչներին, որոնք ընտրվում էին Խորհուրդների հանրապետ. համագումարներում:

ՀԱՄԱՍ (լրիվ անվանումը՝ Իսլամ. դիմադրության շարժում), իսլամ. շարժում և արմատականների քաղ. կուս.: Հիմնադրվել է 1987–ին Պաղեստինի ***Գազա*** ք–ում: 2007–ից՝ կառավարող կուս–յուն Գազայի հատվածում: ԱՄՆ–ում, Մեծ Բրիտանիայում, Իսրայելում, ԵՄ երկրներում և մի շարք այլ պետություններում համարվում է ահաբեկչ., Հորդանանում՝ արգելված կազմ–յուն:

ՀԱՄԱՍԵՔԱՍՏԱՀԱՅ ՎԵՐԱԾԻՆԱՅ ՄԻՈՒԹՅՈՒՆ, Սեբաստիայի հայերի հայրենակց. միություն: Հիմնադրվել է 1936–ին Նյու Յորքում՝ «Համասերաստացիական շինարար միություն» անվամբ, 1950–ից՝ Հ. վ. մ.: Նպատակը Հայաստանում հիմնադրված Նոր Սեբաստիա ավանի շին–յունը խթանելն էր և ներգաղթին օժանդակելը: Հրատարակել է ***«Նոր Սեբաստիա»*** պաշտոնաթերթը:

ՀԱՄԱՄԵՌ ԲԱԶՄԱՆԴԱՄ (մաթ.), բազմանդամ, որի բոլոր գումարելի միանդամների աստիճանը նույնն է. օր.՝ $x^5 + 4x^3y^2 + 3xy^4$:

ՀԱՄԱՄԵՌ ՖՈՒՆԿՑԻԱ, մեկ կամ մի քանի փոփոխականի f (x) = f (x_1, x_2, ... x_n) ֆունկցիա, որի բոլոր x–երի և դրական t–երի համար բավարարում է f (t_x) = f (t_{x1}, t_{x2}, ...t_{xm}) = t^kf(x) պայմանը, որտեղ k–ն իրական թիվ է և կոչվում է համասեռության կարգ:

ՀԱՄԱՍԵՌԱՄՈԼՈՐՖԻԶՄ, **հոմոսեքսուալիզմ** (< ***հոմո***... և լատ.՝ sexus – սեռ), սեռ. կողմնորոշում, որը բնորոշվում է առավելապես կամ բացառապես սեփ. (նույն) սեռի անձանց հանդեպ սեռ. հակումներով: Հ. կարող է լինել մշտ. կամ ժամանակավոր (անցողիկ): Կանանց Հ. անվանում են նաև լեսբիյան սեր (Լեսբոս կղզու անունով, որտեղ մ. թ. ա. VII–VI դդ–ում ապրել է Հ. գովերգող հույն բանաստեղծուհի Սապֆոն): Գենետիկ. գործոնների հետ մեկտեղ Հ–յան ձևավորմանը նպաստում են անհատ. զարգացման առանձնահատկությունները:

ՀԱՄԱՍԵՌՈՒԹՅՈՒՆ, 1. (աստղագիտ.) տիեզերքում նյութի դիտվող համասեռ բաշխում 50 *Մպկ*–ը գերազանցող մասշտաբներում: 125 *Մպկ*^{3} ծավալում միջին հաշվով կան մոտ 600 գալակտիկաներ, և նրանց «լղոզված» նյութի խտությունն ամենուր մոտավորապես նույնն է, կառուցվածքը՝ բջջավոր: 2. Նույն հատկությունների առկայությունը ամբողջի կամայական ամենափոքր մասում:

ՀԱՄԱՍՅԱՆ Տիգրան Կարապետի (ծ. 1987), կոմպոզիտոր, դաշնակահար: 2003–ից՝ Լոս Անջելեսում: Հեղինակ է «Entertain Me», «The Awakening of Mher», «Կարս 1», «Կարս 2», «Կաքավիկ» և այլ ջազ. կոմպոզիցիաների:

Ջազ. դաշնակահարների Մ. Մոլալի անվ. (3–րդ մրց.), «Jazz A. Juan Revelations»–ի (1–ին մրց., երկուսն էլ՝ Ֆրանսիա, 2003), ջազ. մենակատար դաշնակահարների միջազգ. (1–ին մրց. 2003, Մոնտրյո, 2005, Մոնակո), ջազ. դաշնակահարների Առաջին միջազգ. (3–րդ մրց., 2005, Մոսկվա), Թ. Մոնքի անվ. միջազգ. ջազ. (2006), «Vilcek Prize Creative Promise in Contemporary Music»–ի (2013) և այլ մրցույթների դափնեկիր, «Գրեմմի» մրց. (2011), ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2013):

ՀԱՄԱՍՊՐԱՄ (Melandrium), մեխակազգիների ընտանիքի խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 100 տեսակ՝ Հս. (գրեթե ամենուր) և Հվ. (Կապի մարզ, Անդեր) կիսագնդերում: Աճում են մարգագետիններում, ժայռերի վրա, լ–լանջերին և որպես մոլախոտ՝ բանջարանոցներում, այգիներում, դաշտերում: Որոշ տեսակներ գեղազարդիչ են և կերաբույս: Երբեմն Հ. են անվանում խոնարհված ծաղիկներով մեխակազգի այլ բույսերի: ՀՀ–ում հանդիպում է 1 տեսակ՝ Բուասիեյի Հ.՝ տարածված Տավուշի, Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի, Արագածոտնի և այլ մարզերում:

ՀԱՄԱՍՏԵՂ (Կելենյան Համբարձում Հովհաննեսի, 1895–1966), գրող: Հեղինակ է «Գիւղը» (1924), «Անձրեւ» (1929) պատմվածքների, «Քաջն Նազար եւ 13 պատմուածքներ» (1955), «Այծետմար եւ ուրիշ բանաստեղծութիւններ» (1960), «Հայաստանի լեռներու սրնգահարը» (1989) և այլ ժող–ների, «Սպիտակ ձիաւորը» (հ. 1–2, 1952) վեպի, «Առաջին սէրը» (1966) վիպակի և այլ գործերի: Հրատարակվել են նաև «Համաստեղ: Նամականի» (2003), «Համաստեղ: Մոռացված էջեր» (հ. Ա–Դ, 2005–07) գրքերը: Հ–ի հերոսն ազգ. մեծ երազանքով ապրող հայ մարդն է, որի համար հողը սրբություն է:

ՀԱՄԱՍՏԵՂԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, **աստեղատուն**, երկնոլորտի վրա հեշտ կողմնորոշվելու նպատակով առանձնացված ***աստղային երկնքի*** տիրույթներ և աստղերի նշանակումներ: Աստղ. երկինքը բաժանվել է 88 Հ–ի, որոնք կրում են առասպել. հերոսների (Հերկուլես, Պերսևս ևն), կենդանիների (Առյուծ, Ընձուղտ ևն), առարկաների (Կշեռք, Քնար ևն) և այլ անվանումներ: Հ–ի առավել պայծառ աստղերն անվանում են հուն. տառերով (α, β, γ, ..., սովորաբար՝ պայծառության նվազման կարգով)՝ ավելացնելով Հ–ի անվանումը (օր.՝ α Կառավարի), քիչ պայծառ Հ. նշանակում են լատ. տառերով և թվերով: Հ–ի սահմանները, որպես կանոն, անցնում են երկն. զուգահեռականների և հակման շրջանների երկայնքով:

ՀԱՄԱՎԱՐԱԿ, **համայնաճարակ, պանդեմիա** (հուն.՝ pandemia – ողջ ժողդ–ը), համաճարակ, որն ընդգրկում է երկրի, մի քանի երկրների կամ աշխարհամասի բնակչությունը: Հ. բնորոշ է առավելապես օդակաթիլ. ճանապարհով փոխանցվող հիվանդություններին (օր.՝ գրիպին):

«ՀԱՄԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՐՀԱՅՈՑՑ», կիսագնդերի 1–ին հայ. տպագիր քարտեզը: Հրատարակվել է 1695–ին Ամստերդամում՝ Վանանդեցիների տպարանում: Փորագրիչներ՝ Աղրիանոս և Պետրոս Սքոնբեկ (Շխոնբեկ) եղբայրներ: Պատկերում է այն ժամանակվա հայտնի աշխարհը: Քարտեզը հայկ. Վերածննդի գիտ–յան և արվ–ի հուշարձան է:

ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ, 1. քաղաքացիների և իրավաբ. անձանց անդամության վրա հիմնված և իր անդամների գույք. փայավճարների միավորման միջոցով ստեղծված, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբ. անձի կարգավիճակով ոչ առևտր. կոոպերատիվ՝ բազմաբնակարան շենքի կամ շենքերի բաժնային սեփականություն համարվող գույքի կառավարման համար: 2. **Կոնդոմինատ, կոնդոմինում** (< լատ. con(cum) – միասին, dominium – տիրապետում), համատեղ տիրապետություն, գերիշխանություն: 3. (Միջազգ. իրավունք) տվյալ տարածքում 2 կամ ավելի պետությունների պետ. իշխանության համատեղ իրականացումը:

ՀԱՄԱՐԺԵՔ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ, նույն արմատների բազմություն ունեցող հավասարումներ:

ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ՕՐԵՆՔ, քիմ. փոխազդեցության մեջ մտնող նյութերի զանգվածների հարաբերությունները հավասար են

կամ նրանց քիմ. համարժեքների բազմապատիկներն են: Օրենքի մասնավոր ձևակերպումը XVII դ–ի վերջին տվել է Ի. *Ռիխտերը*, իսկ ավելի ընդհ. ձևով՝ անգլիացի քիմիկոս Ու. *Վոլաստոնը* 1807–ին:

ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ (մաթ.), այն երկանդամ հարաբերությունների անվանումը, որոնք հավասարության հարաբերության տիպի են, այսինքն՝ անդրադարձական (ռեֆլեքսիվ) են, համաչափ և փոխանցական. օր.՝ երկրչփ. պատկերների հավասարությունն ու նմանությունը, ուղիղների զուգահեռությունը, համակարգերի իզոմորֆիզմը:

ՀԱՄԱՅԱՆՑ, ինտերնետ (անգլ.՝ INTERconnected NETworks – միացյալ ցանցեր), համաշխ. համակարգչ. ցանց, որի հանգույցների բազմությունը միասն. կանոններով փոխհամագործակցող համակարգիչներ և համակարգչ. սարքավորումներ են, որոնք աշխատում են տարբեր ճարտ–յամբ, տեխ. բնութագրերով և տարածք. տեղակայմամբ անկախ ցանցերի կազմում: Հ–ի հանգույցների միջև հաղորդագրությունների փոխանակման կանոնները սահմանված են TCP/JP (Transmission Control Protocol/Internet Protocol) արձանագրությունների ընտանիքով և նրա հաջորդ. ծավալումներով: Միջցանց. միացությունների համար Հ–ում կիրառում են հաղորդալար. և ոչ հաղորդալար. (ռադիո, այդ թվում՝ արբանյակ.) կապուղիները: Հ. ցանց. ծառայությունների՝ էլեկտրոն. փոստի, համաշխ. սարդոստայնի (Veb), որոնման համակարգերի, սոցիալ. ցանցերի (օր.՝ facebook) հաղորդակցուղային ենթակառուցվածքն է: Հ–ի մուտքի հնարավորությունը տրամադրում են ***համացանց–մատակարարները***: Համացանց. չափորոշիչները (արձանագրություններ, ընթացակարգեր ևն) մշակում է IETF (Internet Engineering Task Forse) միջազգ. ընկերակցությունը, որը ներառված է Համացանցի միջազգ. ոչ առևտրային միության մեջ (ISOC – The Internet Sosiety):

ՀԱՄԱՅԱՆՑ–ՄԱՏԱԿԱՐԱՐ, ինտերնետ–պրովայդեր (անգլ.՝ Internet Servise Provider, ISP), կազմ–յուն, որը տրամադրում է ծառայություններ համացանցի և նրա սպասարկումների մուտքի (օր.՝ կոմուտացնող ու առանձնացված կապուղիներով), նաև կայքերի աշխ–ի պահպանման և ապահովման, սկավառակ. տարածքի վարձակալման (համացանց–հոսթինգ), էլեկտրոն. փոստարկղերի կամ վիրտուալ փոստ. սերվերի, համացանց–հեռախոսության, թվային հեռուստատեսության և ռադիոհաղորդումների վերահաղորդման պահպանման համար: Առաջին Հ–մ. CompuServe (ԱՄՆ) ընկ–ն էր, որը 1979–ին տրամադրել է էլեկտրոն. փոստ. ծառայություններ, 1980–ին ստեղծել առաջին չաթը (համակարգչ. ցանցով հաղորդակցության միջոցը):

ՀԱՄԱԶԳԵՅԻԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, Արմ. Հայաստանի Քղի (Գեղի) գք–ի և գվո–ի հայերի հայրենակց. միություն: Հիմնադրվել է 1933–ին Դետրոյտում (ԱՄՆ): ՀԽՍՀ ԳԽ հրամանագրով Աշտարակի շրջանի Բազմավան գ–ը վերանվանվել է Նոր Գեղի (այժմ՝ ՀՀ Կոտայքի մարզում):

«ՀԱՄԲԱՎԱԲԵՐ», ամենամյա հանդես (1923–24, Մոսկվա՝ հայ., ռուս., ուկր., բելառուս., վրաց., աղբր.), ԽՍՀՄ ԿԳԿ–ի, ԺԿԽ–ի և Աշխ–ի պաշտպ–յան խորհրդի հրտ–յուն:

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԿՂԶԻ, հրաբխ. կղզի Ատլանտ. օվկ–ում: Տարածքը՝ 88 *կմ*^{2}, բարձր կետը՝ 859 *մ* (Գրին Մաունթ): Բն.՝ 880 (2010): Մտնում է Բրիտանիայի ծով. տիրույթների մաս կազմող Սր Հելինեի, Համբարձման և Տրիստան դա Կունյա կղզիխմբի մեջ: Վարչ. կենտրոնը՝ Ջորջթաուն:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ, քրիստ. եկեղեցու տոն: Սահմանվել է ի հիշատակ *Հիսուս Քրիստոսի* երկր. կյանքի վերջին օրերի: Ըստ քրիստ. ուսմունքի՝ Քրիստոսը խաչելությունից 3 օր անց ***հարություն*** է առել և, իր աշակերտներին 40 օր այցելելուց հետո, Ձիթենյաց լ–ան վրայից համբարձվել է երկինք: Հ. տոնվում է *Զատկից* հետո 40–րդ օրը (հինգշաբթի): Հ. Հայաստանում վերածվել է ժող. տոնակատարության: Տես նաև *Կրոնական տոներ*:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Անդրեաս Մարտինի (ծ. 1954), ճարտագայթաբան, ուռուցքաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1992), պրոֆ. (1995): ՀՀ Ուսուցող. ուլտրաձայնային կենտրոնի տնօրեն (2000–ից): Աշխ–ները վերաբերում են հակաքաղցկեղ. պայքարի, ստամոքսաղիք. համակարգի, շնչուղիների, միզասեռ. օրգանների ընդերադիտման, գերձայն. ախտորոշման հարցերին: «Տարվա ճարտագայթաբան» մրց. (2015):

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Աշոտ Հովհաննեսի (ծ. 1955), գեղանկարիչ, բեմանկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (2013): Լալա ***Մնացականյանի*** ամուսինը: 1980–2002–ին՝ Հայաստանի հանր. հեռուստատեսության ձևավորող–նկարիչ, 2004–ից՝ Երևանի «Մհեր Մկրտչյան» արտիստ. թատրոնի գլխ. նկարիչ: Ձևավորել է Է. դե Ֆիլիպպոյի «Ֆիլումենա Մարտուրանո», Մ. Պանիոլի «Հացթուխի կինը» ներկայացումները, Ա. Սաթյանի «Լիլիթ» փոփ–օպերան, Ժ. Բիզեի «Կարմենն» բալետը, հեռուստաներկայացումներ (Տարաբուզ–Սակառնաչիի «Սինյոր Պապագատոն», «Սուսա լեռան 40 օրը»՝ ըստ Ֆ. Վերֆելի, ևն), թատերականացված հանդիսություններ («Էրեբունի–Երևան», «Քրիստոնյա Հայաստան–1700» ևն): Գեղանկարչ. գործերից են՝ «Ավարայր» (2003), «Գինու ավանդույթը» (2008) ևն, ստեղծել է 200–ից ավելի ազգ. տարազներ, զինանշաններ, լոգոներ:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Արմենակ Ջոնիկի (ծ. 1953), համաճարակաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1993), պրոֆ. (1994): ԵՊԲՀ պրոռեկտոր (2013–ից): Աշխ–ները վերաբերում են ներհիվանդանոց. վարակների խնդիրներին: ՀՀ համաճարակաբանների, բժշկ. մակաբուծաբանների ընկերակցության նախագահ (2000), ՌԴ բժշկատեխ. ԳԱ անդամ (2002):

ԵՊԲՀ (2000, 2010), ՌԴ բժշկատեխ. ակադ–ի (2007) ոսկե մեդալներ:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Գագիկ Աշոտի (ծ. 1963), ուռուցքաբան: Բժշկ. գիտ. դ–ր (2014): 2015–ից՝ Ուռուցքաբանության ազգ. կենտրոնի՝ կրծքավանդակի և որովայնի օրգանների ուռուցքաբանության բաժանմունքի վարիչ: Աշխ–ները վերաբերում են կրծքավանդակի և որովայնի օրգանների չարորակ և բարորակ գոյացությունների վիրաբուժ. բուժմանը:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Գոհար Համազասպի (1907–1979), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. թեկնածու (1938), դոցենտ (1939): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1967): Համազասպ *Համբարձումյանի* դուստրը, Վիկտոր *Համբարձումյանի* քույրը: Աշխ–ները վերաբերում են Բեռնուլիի բաշխմանը ենթարկվող անհայտ փորձերի մեջ տեղեկության քանակի որոշման, մարկովյան գծային շարժընթացների և տեղեկատվության տեսության հարցերին:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Գևորգ Ալեքսանդրի (1915–1978), ճարտարագետ–հիդրոտեխնիկ: Տեխ. գիտ. դ–ր (1978): Սերգեյ *Համբարձումյանի* եղբայրը: Աշխ–ները վերաբերում են հիդրավլիկ. անջրպետներով ափապաշտպան կառույցների հետազոտման և մշակման հարցերին. մշակել է հիդրավլիկ. անջրպետով միջանցիկ կարճապատնեշների նոր կառուցվածքներ:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դավիթ Գրիգորի (1956–1992), ջրացատկորդ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1984). Օլիմպ. խաղերի (1980), աշխարհի գավաթակիր և բրոնզե մեդալակիր (1983), Եվրոպայի չեմպիոն (1981) և գավաթակիր (1984): ԽՍՀՄ բազմակի չեմպիոն (1972–84) և գավաթակիր (1975, 1977, 1984), ԽՍՀՄ ժողդ–ների սպարտակիադայի հաղթող (1971, 1983): 1993–ին Հ–ի անունով է կոչվել ՀՀ օլիմպ. հերթափոխի ջրացատկի մանկապատանեկան դպրոցը:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դիանա Հայկի (ծ. 1961), արձակագիր, թարգմանիչ, գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (2007), պրոֆ. (2009): Հեղինակ է «Ու. Ֆոլքների երկերի լեզվաոճական առանձնահատկությունների պահպանման խնդիրը հայերեն թարգմանություններում» (2005), «Գեղարվեստական ստեղծագործությունը և նրա թարգմանությունը որպես բանասիրական համալիր քննության առարկա» (2008) և այլ աշխ–ների, «Աստծո բնակեցրած երկրում» (2009), «Դուռը թակում են» (2014) վեպերի, «Աստղակաթ» (1999), «Այրված կամուրջների վրայով» (2004) վիպակների, «Նոյի թվի դարդ ու ցավ» (2008) և պատմվածքների այլ ժող–ների: Թարգմանել է Ու. Ֆոլքների, Կ. Վոնեգուտի, Փ. Նաջարյանի, Վ. Սարոյանի գործերից:

ՀԳՄ և ՀԱԵ «Կանթեղ» մրց. (2016):

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Զաքար Նիկոլայի (1903–1970), գրադարանագետ: Աշխ–կերտել է Լ. Ն. *Տրոպովսկուն:* Կազմել և խմբագրել է գրադարան. գրացուցակներ ու մեթող. ձեռնարկներ, գրադարան. դասակարգման աղյուսակներ, որոնք գործածվել են նաև ՀԽՍՀ–ում:

ԽՍՀՄ Կարմիր աստղի, ՀՄՊ 1–ին և 2–րդ աստիճանների, Բուլղարիայի «Աբրիության» շքանշաններ:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Ծովակ Բագրատի (1923–2001), կոմպոզիտոր: ՀԽՍՀ մշակույթի վաստ. աշխատող (1983): Եղել է Ալեքսանդր Սպենդիարյանի տուն–թանգարանի տնօրեն (1972–88): ԵՊՈՒՀ կոնցերտմայստեր, ԵՕՖԹ–ի խմբ.: Աշխ–ները վերաբերում են հայկ. բանահյուս. և քաղաք. պարի, հայկ. ժող. գործիքների կատարող. արվ–ի պատմությանը:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Կոստի, **Վասպուրականի Կոստի, Ուխտավոր** (1882–1918), ազգ–ազատագր. շարժման գործիչ: 1915–ին մտել է հայ կամավոր. խմբավորումների միավորումով ստեղծված Արարատյան ջոկատ, դարձել գնդի գումակի պետ, 1915–ի մայիսին մասնակցել Վանի ազատագրմանը: 1917–ի աշնանը դարձել է Վանի հայկ. ժամանակավոր կառ–յան ղեկ.: Հ. ապահովել է գաղթականների անվտանգությունը: Զոհվել է մարտում:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Համազասպ Ասատուրի (1880–1965), թարգմանիչ, գրակա–

նագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1953), պրոֆ. (1954): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1962): Վիկտոր և Գոհար ***Համբարձումյանների*** հայրը: Հեղինակ է «Անհունի էջերում» (1904), «Բանաստեղծություններ» (հ. 1–3, 1927–29) և բանաստեղծությունների այլ ժող–ների, «Մտորումներ Հոմերոսի մասին» (1964) աշխ–յան: Ռուս. է թարգմանել Նահապետ Քուչակի հայրենները, հայ.՝ Ջ. Բայրոնի, Հ. Հայնեի, Մ. Յ. Լերմոնտովի, Մ. Գորկու գործերից, «Հույն ողբերգակներ» (1950) ժող–ը, Հոմերոսի «Իլիականը» (1955) և «Ողիսականը» (1958):

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Համբարձում Միրոնի (ծ. 1919), խորհրդ. բանակի հրետանու գեն–լեյտ. (1968, գեն–մայոր՝ 1962–ից): ՀՄՊ–ի ժամանակ եղել է զենիթթ. մարտկոցի, դիվիզիոնի, 1943–ից՝ գնդի հրամ.: 1941–ին մասնակցել է Մոսկվայի, Սմոլենսկի, 1944–ին՝ Մինսկի ազատագրման համար մղված մարտերին, 1945–ին՝ Քյոնիգսբերգի (այժմ՝ Կալինինգրադ) գրավմանը, Լեհաստանի ազատագրմանը: 1956–ից՝ զենիթահրթիռ. դիվիզիայի հրամ., 1971–ից՝ Թուրքեստանի ՋՕ–ի սահմանապահ զորքերի պետ: 1973–ից ԽՍՀՄ ՀՕՊ–ում վարել է պատասխանատու պաշտոններ: Զորացրվել է 1977–ին:

ԽՍՀՄ Կարմիր դրոշի (2), ՀՄՊ 1–ի աստիճանի, Կարմիր աստղի (3) շքանշաններ:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Հենրիկ Շավարշի (1927–1995), հիգիենիստ–թունաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1975): Ուսումնասիրել է Հայաստանի բնակչության առողջության վրա թունաքիմիկատների ազդեցությունը: Առաջինն է կազմել գյուղ. բնակավայրերում նորածինների ֆիզ. զարգացման գնահատման աղյուսակներ:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Մկրտիչ Համբարձումի (1907–1991), կենսաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1968): Աշխ–ները վերաբերում են ՀՀ պայմաններում պտղատու ծառատեսակների և խաղողի վազի ցրտադիմացկունության ֆիզիոլոգիայի հարցերին: Մշակել է խաղողի վազի ցրտահարությունների դեմ պայքարի ֆիզքիմ. եղանակներ, զերչորացման դեմ պայքարի միջոցառումներ:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Պետրոս Վարդգեսի (ծ. 1957), ճարտարագետ: Տեխ. գիտ. դ–ր (2013): Աշխ–ները վերաբերում են հիդրոմակարդակաչափման մեթոդների և միջոցների մշակմանը: Նրա մշակած չափման նոր մեթոդն ու ստեղծած սարքերը ներդրվել են տարբեր ջրէկներում և ՀԱԷԿ–ում: ՀԼԿԵՄ մրց. (1986):

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Ռաֆայել Վիկտորի (ծ. 1940), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1981): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (2008): Վիկտոր ***Համբարձումյանի*** որդին, Ռուբեն ***Համբարձումյանի*** եղբայրը: ՌԳԱ ֆիզիկայի ինստ–ի լազեր. բժշկության լաբորատորիայի վարիչ (1982–ից): Աշխ–ները վերաբերում են քվանտ. ֆիզիկային, լազեր. սպեկտրաչափությանը, քիմ. ֆիզիկային, նաև իզոտոպների լազեր. բաժանման, բջիջներում ու օրգանիզմներում լուսաքիմ. շարժընթացներին:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Ռաֆիկ (Ռաֆայել) Հայրիկի (ծ. 1948), պատմաբան, խմբ.: Պատմ. գիտ. թեկնածու (1987): 1987–89–ին՝ «***Անկախություն***» շաբաթաթերթի խմբ., 1989–2002–ին՝ «Ազատ Հայք», 2005–09–ին՝ «***Նախիջևան***» թերթերի հիմնադիր–խմբ.: Հեղինակ է «Թուղթ ընդհանրական: Յորդորակ» (1990), «Սադոկ Բարոնչը լեհահայոց պատմության ուսումնասիրող» (1998), ««Որոգայթ փառաց». ակունքները…» (1999), «Վարք Նժդեհի» (2001) և այլ աշխ–ների:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Ռուբեն Սարգսի (1911–1971), մետաղագետ և ֆիզքմիկոս: Տեխ. գիտ. դ–ր (1954), պրոֆ. (1955), ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1966): ՌԽՖՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1967): Մշակել է տեխնիկայում մեծ կիրառություն գտած կոռոզիակայուն կառուցվածք. համաձուլվածքների ստացման տեխնոլոգիա և մետաղները կոռոզիայից պաշտպանելու եղանակներ:

ԽՍՀՄ Պետ. (1949, 1953) և Լենինյան (1960) մրց–ներ:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Ռուբեն Վիկտորի (ծ. 1941), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1975), պրոֆ. (1975), ՀՀ ԳԱԱ ակադ. (1986, թղթ. անդամ՝ 1982–ից): Վիկտոր ***Համբարձումյանի*** որդին, Ռաֆայել ***Համբարձումյանի*** եղբայրը: Լուծել է Բյուֆոն–Սիլվեստրի խնդիրը, տվել Ժիլբերտի 4–րդ խնդրի կոմբինատոր. լուծումը, կառուցել կոմբինատոր. ինտեգրալ երկրչփ–յան տեսություն: Առաջարկել է ֆակտորացման հաշիվը՝ երկրչփ. հավանականությունների տեսության մեջ:

ՀԼԿԵՄ (1965), Քեմբրիջի համալսարանի Ռ. Դավիդովի անվ. (1982) մրց–ներ, ՀՀ «Ականիա Շիրակացի» մեդալ (2013):

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Սերգեյ Ալեքսանդրի (ծ. 1922), մեխանիկոս, հաս., պետ. գործիչ: Տեխ. գիտ. դ–ր (1952), պրոֆ. (1953), ՀՀ ԳԱԱ ակադ. (1965, թղթ. անդամ՝ 1956–ից), ՌԳԱ արտ. անդամ (2003): ՀՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1986): Գևորգ ***Համբարձումյանի*** եղբայրը: Եղել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի (1959–70), Մեխանիկայի (1970–77) ինստ–ների տնօրեն, ԳԱ փոխնախագահ (1974–77), ԵՊՀ ռեկտոր (1977–91): Աշխ–ները վերաբերում են սալերի և թաղանթների ընդհ. տեսությանը, մագնիսաառաձգականության հարցերին: Ստեղծել է անիզոտրոպ շերտավոր թաղանթների ընդհ. տեսություն, որի հիման վրա լուծվել են բարակապատ կառուցվածքների հաշվարկի և նախագծման բազմաթիվ խնդիրներ: Ղարաբաղյան շարժման ակտիվ մասնակիցներից է: Մի շարք միջազգ. ակադ–ների անդամ և պատվ. անդամ: «Համագործակցության աստղ» միջպետ մրց. (2016):

Լենինի (1981) և ԽՍՀՄ «Պատվո նշան» (1971), Աշխ. կարմիր դրոշի (1976), Հոկտ. հեղ–յան (1986), Յան Կոմենսկու (1984), ՌԴ Բարեկամության, ՀՀ «Տիգրան Մեծ», ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» (2002) շքանշաններ, ՀՀ Աշխ. արիության համար մեդալ: Մոնպելիեի (1986, Ֆրանսիա), Գյումրու (1997), Երևանի (2013) պատվ. քաղաքացի:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Սերգո Իսկանդարի (1910–1983), ծանրորդ: ԽՍՀՄ ս. վ. (1934), ս. վ. վ. (1961): Աշխարհի (1930), ԽՍՀՄ (1931–35), Անդրկովկասի և Հայաստանի (1930–54) չեմպիոն: Ռեկորդակիր՝ 1938–ին:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Վազգեն Գուրգենի (ծ. 1948), բանասեր, լեզվաբան, թարգմանիչ, խմբ.: Բանասիր. գիտ. դ–ր (1991), պրոֆ. (2013): 2011–13–ին՝ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստ–ի տնօրեն: ***«Լեզու և լեզվաբանություն»*** ամսագրի հիմնադիր–խմբ. (2003–ից): Հեղինակ է «Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ–ԺԹ դդ.» (1990), «Հայերենը և հնդեվրոպերենը» (անգլ., 2014), «Ակնարկներ հայ բառարանագրության պատմության» (հ. 1–2, 1998–2015), «Լատինական հայերենի պատմություն (14–18–րդ դդ.)» (2010), «Հովհան Սամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը» (2013) աշխ–ների:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Վեմիր Վանուշի (ծ. 1929), ճարտարագետ–մեխանիկոս: Տեխ. գիտ. դ–ր (1984), պրոֆ. (1985): Աշխ–ները վերաբերում են ճանապարհ. երթևեկության անվտանգության հարցերին: Հետազոտել է վարորդ–ավտոմոբիլ–ճանապարհ. միջավայր համակարգը և առաջադրել պատահարների կանխման գիտ. և գործն. մեթոդներ: 1995–ից՝ ԱՄՆ–ում:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Վիկտոր Համազասպի (1908–1996), աստղաֆիզիկոս, տես. աստղաֆիզիկայի հիմնադիրներից: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1935), պրոֆ. (1934), ՀԽՍՀ ԳԱ (1943), ԽՍՀՄ ԳԱ (1953) ակադ.: Սոց. աշխ. հերոս (1968, 1978): ՀԽՍՀ (1940), ՎԽՍՀ (1966) գիտ. վաստ. գործիչ: Հայաստանի Ազգ. հերոս (1994): Համազասպ ***Համբարձումյանի*** որդին, Գոհար ***Համբարձումյանի*** եղբայրը, Ռաֆայել և Ռուբեն ***Համբարձումյանների*** հայրը: ՀՀ ԳԱԱ հիմնադիրներից և 1–ին փոխնախագահը (1943–ից): 1947–94–ին՝ ՀՀ ԳԱԱ (1994–96–ին՝ պատվ.) նախագահ, 1946–88–ին՝ Բյուրականի աստղադիտարանի հիմնադիր (1988–96–ին՝ պատվ.) տնօրեն: 1955–91–ին՝ ԽՍՀՄ ԳԱ նախագահության անդամ, 1994–96–ին՝ ՌԳԱ խորհրդական: Եղել է Հայկ. հանրագիտարանի ստեղծման նախաձեռնողներից և 1–ին գլխ. խմբ–ը (1965–74), գիտախմբագր. խորհրդի նախագահը (1968–87, ՀՀ Պետ. մրց.՝ 1988), պատվ. նախագահ (1988–96):

Աշխ–ները վերաբերում են տես. աստղաֆիզիկային, աստղերի ու միգամածությունների ֆիզիկայի, աստղ. դինամիկայի արտագալակտիկ. աստղագիտ–յան, աստղերի և գալակտիկայի էվոլյուցիայի հարցերին: Ստեղծել է գազ. միգամածությունների լուսարձակման տեսությունը, նոր աստղերից արտանետվող և անկայուն աստղերի մակերևույթներից արտահոսող գազ. զանգվածների գնահատման մեթոդ: Մշակել է աստղ. համակարգերի վիճակագր. մեխանիկայի հիմունքները: Ցույց է տվել, որ աստղակույտերն աստիճանաբար քայքայվում են, և քայքայման արագությունից ելնելով՝ կարելի է գնահատել դրանց տարիքը: Բացահայտել է, որ գալակտիկայում լույսի միջաստղ. կլանումը հարուցվում է ոչ թե արնդհատ միջավայրով (ինչպես ընդունված էր), այլ համաչափության հարթության շուրջը կենտրոնացած բազմաթիվ մութ, փոշային միգամածությունների կլանող ամպերի առկայությամբ: Այդ ամպերի ուսումնասիրության համար Հ. մշակել է ֆլուկտուացիաների տեսությունը: Ստեղծել է լույսի յուրօրինակ ցրման տեսություն, որը հիմնվում է իր իսկ առաջադրած ***Համբարձումյանի ինվարիանտության սկզբունքի*** վրա և տալիս է հիմնախնդրի ճշգրիտ լուծումը (ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1946): Այդ սկզբունքը դարձել է աստղաֆիզիկայի, ֆիզիկայի, երկրաֆիզիկայի մի շարք խնդիրների, այդ թվում՝ նաև լույսի ցրման ոչ գծային տեսության որոշ խնդիրների լուծումը:

Հ. 1947–ին հայտնագործել է նոր տիպի աստղ. համակարգեր՝ ***ասոցիացիաներ*** (ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1950, Բենիամին ***Մարգարյանի*** հետ): Հաստատել է աստղասփյուռների երիտասարդ լինելը, ապացուցել, որ գալակտիկայում աստ–

ղաառաջացումը շարունակվում է և ունի խմբակային բնույթ: Բացահայտել է T Յուլի տիպի և բռնկվող աստղերի տեղն աստղ. էվոլյուցիայի ընդհ. շղթայում՝ որպես զարգացման ամենավաղ փուլերի ներկայացուցիչների: 1950-ական թթ–ին Հ. հայտնագործել է գալակտիկայի կենտր. խտացումների՝ գալակտիկ. կորիզների ակտիվությունը: Աշակել է նախաաստղերի վարկածը, ըստ որի՝ դրանք փոքր չափերի մեծ խտությամբ մարմիններ են, որոնք, տրոհվելով, սկզբնավորում են աստղեր և աստղ. համակարգեր: 1991-ին աստղ. համակարգերի դինամիկայի կառուցման շարքի համար արժանացել է ՌԴ Պետ մրց–ի (1995): Նախաաստղերի վարկածի կապակցությամբ Հ. ստեղծել է աստղերի գերխիտ գոյացծների տեսության հիմունքները: Կարևոր արդյունք է ստացել ֆիզիկայում և աստղագիտ–յան մեջ հանդիպող ***հակադարձ խնդիրների*** լուծմամբ: Ս. Պետերբուրգում և Բյուրականում ստեղծել է գիտ. դպրոցներ:

Միջազգ. աստղագիտ. միության փոխնախագահ (1948–1955), նախագահ (1961–64), գիտ. ընկ–ների միջազգ. խորհրդի նախագահ (1961–72): Աշխարհի 70–ից ավելի երկրների ԳԱ և համալսարանների անդամ, պատվ. անդամ և պատվ. դ–ր:

Լենինի (5՝ 1945, 1958, 1968, 1974, 1978), Հոկտ. հեղ–յան (1983), Աշխ. կարմիր դրոշի (1944, 1953), «Պատվո նշան» (1988), Բուլղարիայի «Կիրիլ և Մեֆոդի» 1–ին աստիճանի (1969), Հունգարիայի «Դրոշի» (1975), Լեհաստանի «Վաստակի կոմանդոր» (1973) շքանշաններ, ԽՍՀՄ ԳԱ Մ. Վ. Լոմոնոսովի (1971), Ս. Ի. Վավիլովի (1970) անվ. և աշխարհի բազմաթիվ երկրների ԳԱ–ների ոսկե մեդալներ:

Հ–ի անունով է կոչվել 1905–րդ փոքր մոլորակը, Բյուրականի աստղադիտարանը, սահմանվել ***Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակ***: Նրա ծննդյան օրը (սեպտ. 18–ը) ՀՀ–ում նշվում է որպես Աստղագիտության օր:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Վլադիմիր Ալեքսանդրի (ծ. 1945), ճարտարագետ–շինարար: Տեխ. գիտ. դ–ր (1997), պրոֆ. (2001): Աշխ–ները վերաբերում են շին. կառուցվածքների սեյսմակայունությանը և շին. մեխանիկային

սողությունը, նյարդ. համակարգը, օրգանիզմի առանձին ֆունկցիաները, կառուցվածք. տարրերը (հյուսվածք, բջիջ), նաև կենսբ. ակտիվ նյութերը (սպիտակուց, ֆերմենտ, միջնորդանյութեր ևն): Հ. ֆ-ի առաջընթացին մեծապես նպաստել են Լևոն *Օրբելին* և Խաչատուր *Կոշտոյանցը*:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (մաթ.), ֆունկցիոնալ կախվածության պարզագույն տեսակ (տես *Ֆունկցիա*): Տարբերում են **ուղիղ Հ.**, որը $y = cx$ տեսքի ֆունկցիոնալ կախվածությունն է, և հակադարձ Հ.՝ $y = c/x$, որտեղ c-ն հաստատուն Հ-յան գործակից է:

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ, քերական. կարգ. ցույց է տալիս որակ. ածականի և մակբայի արտահայտած հատկանիշի չափը, աստիճանը: Դրսևորվում են համադր. (բառի սկզբնաձևի վրա մասնիկ ավելացնելով) կամ վերլուծ. (Հ. ա. ցույց տվող բառի հարադրմամբ) եղանակներով: Տարբերում են դրական (օր.՝ մեծ), բաղդատ. (օր.՝ ավելի մեծ, նվազ մեծ, չափազանց մեծ), գերադր. (օր.՝ ամենամեծ, մեծագույն) Հ. ա:

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ, 1. (մաթ.) a, b, c, d մեծություններից կազմված 2 հարաբերությունների հավասարություն՝

$$\frac{a}{b} = \frac{c}{d}$$

կամ a : b = c : d : a, b, c, d մեծությունները կոչվում են Հ-յան անդամներ, ընդ որում՝ a-ն և d-ն ծայրանդամներ են, b-ն և c-ն՝ միջին անդամներ: Հ-յան հիմն. հատկությունը ծայրանդամների և միջին անդամների արտադրյալների հավասարությունն է՝ ad = bc:

2. (Գրկ.) գեղ. խոսքի պատկերավորման միջոց. հիմնվում է 2 երևույթի նմանության (ընդհանրության) վրա: Հիմնականում բաղկացած է 3 անդամից՝ համեմատվող, համեմատելի առարկաներ և երկուսի համար ընդհ. հատկանիշ («Հոգիս մոայլ էր մըրրիկի նման», Ա. Իսահակյան):

ՀԱՄԵՄԻ ՍԵՐՄՆԱԿՆԵՐ, հաստոտիկների ընտանիքի միջատ, համեմի և նեխուրազգի այլ բույսերի վնասատու: Տարածված է լայնորեն: Սև միջատ է, երկ.՝ 1,5–2,5 *մմ*: Սնվում է ծաղիկներով, թրթուրները՝ սերմերով:

ՀԱՄԵՄՈՒՆՔՆԵՐ, բույսերի տարբեր մասեր, որոնք ոչ մեծ քանակությամբ ավելացվում են սննդին՝ յուրահատուկ համ ու հոտ տալու համար: Հ. են բույսերի սերմերը (մանանեխ, մշկընկույզ ևն), պտուղները (տաքդեղ, քեմոն), ծաղիկները (մեխակ), տերևները (դափնետերև), արմատները (դարչին) և արմատապտուղները (մաղադանոս, ծովաբողկ ևն): Բարձրացնում են սննդի պահպանունակությունը, խթանում մարսողությունը:

ՀԱՄԵՐԻԿ (Hamerik) Ասգեր (1843–1923), դանիացի կոմպոզիտոր: 1871–95-ինապրել է Բալթիմորում (ԱՄՆ), ղեկավարել իր հիմնադրած սիմֆ. նվագախումբը: Հեղինակ է օպերաների («Վենդետտա», 1870, ևն), կանտատների, ծրագր. սիմֆոնիաների, «Հյուսիսային սյուիտներ»-ի (1872–78), դաշնամուր. կվինտետի, վոկալ երկերի ևն:

ՀԱՄԶԱ Հաքիմզադե Նիյազի (1889–1929), ուզբեկ գրող, կոմպոզիտոր, դերասան: Ուզբ. ԽՍՀ ժող. բանաստեղծ (1926): Առաջին ուզբ. խորհրդ. թատրոնի հիմնադիրը (1917, Ֆերգանա): Հեղինակ է «Դիվան» («Դեվոն», 1905–14, ուզբ. և տաջիկ.) չափածո ձեռագիր երկի, «Բուրավետ վարդ» (1919) և այլ բանաստեղծությունների ժող-ների, «Բայն ու բատրակը» (1918), «Մայսարայի արաբները» (1926), «Փարանջայի գաղտնիքները» (1927) և այլ պիեսների, նաև մի շարք երգերի:

ՀԱՄԶԱԹ ԲԵԿ, Համլա բեկ (1789–1834), Դաղստանի և Չեչնիայի երկրորդ իմամը՝ 1832-ից: 1834-ին գրավել է խանության Խունչախ մայրաքաղաքը, այնտեղ տեղափոխել իմամության մայրաքաղաքն ու գանձատունը, ոչնչացրել ամբողջ խան. ընտանիքը: Սպանվել է Հաջի Մուրադի գլխավորությամբ դավադրության հետևանքով: Նրան հոջորդել է *Շամիլը*:


ՀԱՄԶԱԹՈՎ Հաջի Համզաթի (1926–2011), ավար գրականագետ, բանահավաք, արևելագետ: ՌԴԱ ակադ. (2000, թղթ. անդամ՝ 1991-ից): Վրաստանի ԳԱԱ պատվ. անդամ (2010): ՌԴ (1993), Ադրեղական ԻՄ (2011) գիտ. վաստ. գործիչ: Հ. *Յաղասայի* որդին, Ռ. Հ. *Համզաթովի* եղբայրը: Հեղինակ է Դաղստանի գրկ-նեբին, դրանց զարգացման խնդիրներին ու փոխազդեցությանը վերաբերող հոդվածների և մենագրությունների:

ՀԱՄԶԱԹՈՎ Ռասուլ Համզաթի (1923–2003), ավար բանաստեղծ: Դաղստանի ժող. բանաստեղծ (1959): Սոց. աշխ. հերոս (1974): Հ. *Յաղասայի* որդին: Հ. Հ. *Համզաթովի* եղբայրը: Հեղինակ է «Իմ ծննդյան տարին» (1950), «Բարձր աստղեր» (1962) և այլ բանաստեղծությունների ու պոեմների ժող-ների, «Երգեր Հայաստանի մասին» շարքի և այլ գործերի: Հայ. հրատարակվել են «Դաղստանի աստղը» (1967), «Լեռնցի աղջիկը» (1971) ժող-ներ, «Զարեմա» (1969) պոեմը: Հ-ի պոեզիային բնորոշ են քաղաքացիականությունը, քնարականությունը, փիլ. տարրերը, ազգբանահյուս. կոլորիտը:

ԽՍՀՄ (1952), ՌԽՖՍՀ (1980) Պետ., Լենինյան (1963) մրց-ներ:

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԵՐԱԶՄ, տոտալ պատերազմ, հարձակող. պատերազմի վարման և հակառակորդի ՋՈՒ-ի ու խաղաղ բնակչության զանգված. ոչնչացման ռազմ. դրույթ: Առաջադրել է գերմանացի գեն. Է. *Լյուդենդորֆը* 1935-ին: Այն դրվել է ֆաշիստ. ռազմ. հայեցակարգի հիմքում:

ՀԱՄԸՆԹԱՑ ՇԱՐԺՈՒՄ, պինդ մարմնի շարժում, երբ մարմնի որևէ 2 կետ միացնող ուղիղը շարժման ընթացքում մնում է ինքն իրեն զուգահեռ: Հ. շ-ման դեպքում մարմնի բոլոր կետերը գծում են միատեսակ հետագծեր և ժամանակի յուրաքանչյուր պահին ունենում են թվային մեծությամբ և ուղղությամբ նույն արագություններն ու արագացումները: Այդ պատճառով Հ. շ-ման հետազոտումը բերվում է կետի կինեմատիկայի խնդրին:



ՀԱՄԻ (Hāmi), ք. Չինաստանում, Սինցզյան-Ույղուր. ԻՄ-ի համանուն օկրուգի վարչ. կենտրոնը: Բն.՝ 472 հզ. (2010):

ՀԱՄԻ ՕՐԳԱՆՆԵՐ, կաթնասունների և մարդու Հ. օ. բերանի խոռոչում են, հիմնականում՝ լեզվի լորձաթաղանթի ծակոտիների տակ, և բաշխված են անհավասարաչափ: Առավել զարգացած են այն կենդանիների Հ. օ., որոնք դանդաղ և լավ են ծամում կերը: Լեզվի եզրերն ավելի զգայուն են թթու, ծայրը և եզրերը՝ աղի, քաղցր, հիմքը՝ դառը համերի նկատմամբ: Հ. օ-ի բջիջները ձևափոխված էպիթել. բջիջներ են և չունեն նյարդ. վերջույթներ:

ՀԱՄԻԴԻ Լաթիֆ Աբդուլիայի (1906–1983), ղազախ կոմպոզիտոր: Ղազ. ԽՍՀ ժող. արտիստ (1966): Ղազախ. երաժշտության հիմնադիրներից: 1938–40-ին՝ Ս. Կուրմանհազիի անվ. ղազախ. ժող. գործիքների նվագախմբի գլխ. դիրիժոր և գեղ. ղեկ., 1940–42-ին՝ ղազախ. պետ. երգչախմբի գեղ. ղեկ. և դիրիժոր: Համահեղինակ է Ղազ. ԽՍՀ օրհներգի (1945), «Աբայ» (1944, 2-րդ խմբագրությունը՝ 1956), «Տուլեգեն Տոխտարով» (1947, 2-րդ խմբագրությունը՝ 1961) և այլ օպերաների, հեղինակ է կամեր-գործիք. գործերի, խմբերգերի, ռոմանսների, երգերի, ժող. երգերի մշակումների: Ղազ. ԽՍՀ Պետ. մրց. (1978):

ՀԱՄԻԴԻԵ, քրդերի անկանոն զինված հեծելազնդեր Թուրքիայում: Կազմակերպել և իր անունով կոչել է սուլթան *Աբդուլ Համիդ II*-ը 1891-ին: Հ. միավորումները (մոտ 30 գունդ) ստեղծվել են հայերի ազատագր. շարժումները ճնշելու, Արմ. Հայաստանում և Թուրքիայում հայկ. ջարդեր կազմակերպելու համար: Հ-ի միջոցով սուլթանը կազմակերպել է 1895–96-ի հայկ. կոտորածները: 1915-ին Հ-ները մասնակցել են հայերի ցեղասպանությանը:

ՀԱՄԻԼԿԱՐ ԲԱՐԿԱ (Hamilcar Barca, մ. թ. ա. 280–229), Կարթագենի զորավար: *Հաննիբալի* հայրը: 1-ին Պունիկյան պատերազմի ժամանակ Սիցիլիայում բազմիցս պարտության է մատնել հռոմեացիներին: Մ. թ. ա. 237–229-ին նվաճել է Իսպանիայի հվ-արմ. մասը:

ՀԱՄԻԼՏՈՆ (Hamilton) Ալեքսանդր (1755/57–1804), Ֆեդերալիստների կուսյան առաջնորդը՝ 1789-ից, ԱՄՆ ֆինանսների նախարար՝ 1789–95-ին: Ձ. *Վաշինգտոնի* քարտուղարը՝ Անկախության պատերազմի ժամանակ (1775–83):

ՀԱՄԻԼՏՈՆ Ուիլյամ Ռոուան (1805–1865), իռլանդացի մաթեմատիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1837): Աշակել է կոմպլեքս թվերի տեսության ճշգրիտ ֆորմալ շարադրանքը, կառուցել թվերի ինքնատիպ համակարգ՝ *քվատերնիոնների համակարգը*: Մեխանիկայում ներմուծել է փոքրագույն գործողության ընդհ. սկզբունքը:

ՀԱՄԻԼՏՈՆ, 1. ք-ավինգստ Կանադայում՝ Օնտարիո պրովինցիայում: Բն.՝ 520 հզ.(2011): Աշակութ. կենտրոն է, տրանսպորտ. հանգույց, ունի միջազգ. օդանավակայան: Կան համալսարան, գեղարվ-ի պատկերասրահ, թանգարաններ: Հ-ում է Կայսեր. բուսաբ. այգին: 2. Ք-նվինգստ Բրիտ. տիրույթի Բերմուդյան կղզիներում: Մեծ Բրիտանիայի անդրծով. տարածքի՝ Բերմուդի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,2 հզ. (2010): 3. Ք. Նոր Զելանդիայում՝ Հս. կղզում: Բն.՝ 166,7 հզ. (2010):

ՀԱՄԻԼՏՈՆԻ ՖՈՒՆԿՑԻԱ, Ու. Համիլտոնի ներմուծած ֆունկցիան պոտենցիալ ուժերի ազդեցությամբ մեխ. հոլոնոմ համակարգի շարժումը նկարագրելու համար: Արտահայտվում է q_i ընդհանրացված կոորդինատներով, p_i ընդհան-

րացված իմպուլսներով, t ժամանակով և հավասար է՝

$$H(q_i, p_i, t) = \Sigma p_i q_i - L(q_i, \dot{q}_i, t),$$

որտեղ $L(q_i, \dot{q}_i, t)$ Լագրանժի ֆունկցիան է, i = 1, ..., n (n–ը համակարգի ազատության աստիճանների թիվն է)։ Եթե համակարգի վրա կիրառված կապերը ստացիոնար են, ապա Հ. ֆ. համընկնում է ընդհանրացված կոօրդինատներով և իմպուլսներով արտահայտված լրիվ մեխ. էներգիայի հետ։

ՀԱՄԻԼՏՈՆԻԱՆ, Համիլտոնի օպերատոր քվանտային տեսությունում, քվանտ. համակարգի լրիվ էներգիայի օպերատորը, որով արտահայտվում է նրա դինամիկան դաշտի քվանտ. տեսությունում։ Հ. կառուցվում է դաշտի դաս. տեսության համիլտոնյան պատկերացումների հիման վրա, որում գլխավորը քվանտ. դաշտի ծնման և ոչնչացման քվանտ. օպերատորներն են։

ՀԱՄՄԱՐՇՅՈԼԴ (Hammarskjöld) Դագ Յալմար (1905–1961), շվեդ պետ., քաղ. գործիչ։ Կ. Յ. *Համմարշյոլդի* որդին։ 1953–ից՝ ՄԱԿ–ի գլխ. քարտուղար։ Զոհվել է ավիավթարից։

Խաղաղության Նորելյան մրց. (1961)։

ՀԱՄՄԱՐՇՅՈԼԴ Կնուտ Յալմար (1862–1953), Շվեդիայի վարչապետ՝ 1914–17–ին, միաժամանակ (1914)՝ ռազմ. նախարար։ Դ. Յ. *Համմարշյոլդի* հայրը։ Ունեցել է գերմ. կողմնորոշում։

ՀԱՄՄԵԹ (Hammett) Դեշիլ (1894–1961), ամերիկացի գրող։ «Արյունոտ հունձք» (1929), «Մալթայական բազե» (1930, կինոնկար՝ 1941), «Ապակե բանալի» (1931), «Նիհար մարդը» (1934) դետեկտիվ վեպերում հեգնում է «ամերիկյան երազանքը» և «ավանդական բարոյականությունը»։

ՀԱՄՄԵԹ Լուիս Պլակ (1894–1987), ամերիկ. ֆիզքիմիկոս։ Աշխ–ները վերաբերում են ֆիզ. օրգ. քիմիային։ Ներմուծել է (1932) «թթվայնության ֆունկցիա» հասկացությունը, ցույց է տվել նրա կապը թթվահիմնային ռեակցիաների արագության հետ։ Հաստատել է ռեակցիայի կինետիկ. պարամետրերի և օրգ. միացության կառուցվածքի միջև հարաբերակցությունը (Համմեթի հավասարում)։

ՀԱՄՄԵՐ–ՊՈՒՐԳՇՏԱԼ (Hammer-Purgstall) Յոզեֆ ֆոն (1774–1856), ավստրիացի արևելագետ և դիվանագետ։ Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. անդամ (1823)։ Վիեննայի ԳԱ նախագահ (1847–49)։ Աշխ–ները վերաբերում են Օսմ. կայսրության պատմությանը։

ՀԱՄՄՈՒՐԱԲԻ, Համուրապի, Բաբելոնի թագավոր՝ մ. թ. ա. 1792–50–ին, զորավար։ Նվաճել է Միջագետքի մեծ մասը, Ասրեստանը, ստեղծել Արևելքի հին ստրկատիր. պետության իրավունքի հայտնի հուշարձաններից Համմուրաբիի օրենքները։ Պահպանվել են ստելայի վրա՝ սեպագիր։ Հայտնաբերվել են 1901–02–ին Միջագետքի Սուզերում (այժմ՝ Իրանի Խուզիստան նահանգ–ում)։

ՀԱՄՇԵՆ, Համամշեն, հայկ. կիսանկախ իշխանություն, ապա՝ հայաբնակ գավառ Սև ծովի հվ–արլ. ափին VIII դ–ի վերջ–XX դ–ի սկզբին։ Արաբ. հալածանքներից խուսափող Համամ և Շապուհ Ամատունի իշխանները 789–790–ին Վասպուրականի Արտազ գավառից (մասամբ՝ Այրարատից) 12 հզ. գաղթականներով տեղափոխվել են և բնակություն հաստատել բյուզ. Խաղտիք բանակաթեմում։ Բյուզանդիայի Կոստանդին VI կայսեր շնորհած Տամբար վայրում Համամ իշխանը հիմնադրել է Համամշեն (Համշեն) ավանը, որի անունով կոչվել է նաև գավոկ–ը, բնակչությունը՝ համշենցիներ, համշենահայեր։ Քաջքար լեռը հս. լանջերի և շրջակա ձորերի հետ կազմել է Հ. կիսանկախ իշխանության կորիզը։ 1489–ին Հ. գրավել են օսմ. թուրքերը։ Հ. մինչև XX դ–ի սկիզբը պահպանել է կիսանկախ վիճակը։

«ՀԱՄՇԵՆ», ազգ., գր–լուսավոր. պարբերաթերթ (1991–ից, Երևան, ապա՝ Սուխում՝ հայ., ռուս.)։ Աբխազիայի հայերի միության հրտ–յուն։ Հիմնադիր–խմբ.՝ Արտավազդ Սարեցյան։ 1999–ից «Գրադարան» մատենաշարով լույս է ընծայում աբխազահայ գրողների ստեղծագործությունները (gայսօր՝ ավելի քան 20 ժող.)։

ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐԲԱՌ, հայ–ի «կը» ճյուղի բարբառ։ Խոսվել է Տրապիզոնում և նրանից արմ. ընկած տարածքում։ Ունի եռաստիճան խլազուրկ (բ՛–բ–փ) բաղաձայն. համակարգ։

ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐ, համշենահայեր, համամշենցիներ, VIII դ–ի վերջից Սև ծովի հվ–արլ. ափին բնակություն հաստատած հայեր։

ՀԱՄՍՏԵՐՆԵՐ (Cricetinae), **գերմանամկներ**, կրծողների կարգի համստերանմանների ընտանիքի ենթաընտանիք։ Մարմնի երկ.՝ 5–36 *սմ*, պոչը սովորաբար կարճ է։ Հայտնի է մոտ 391 տեսակ՝ Եվրասիայում, Հվ. Աֆրիկայում, Հս., հատկապես՝ Կենտր. և Հվ. Ամերիկայում։ Մի շարք վարակների հարուցչակիր են։ ՀՀ–ում տարածված են փոքրասիական Հ. և մոխրագույն համստերիկը։ Փոքր և միջին չափերի, վերգետնյա, ստորգետնյա և կիսաջր. կենսակերպ ունեցող փորող կենդանիներ են։

ՀԱՄՍՈՒՆ (Hamsun, Պեդերսեն) Կնուտ (1859–1952), նորվեգացի գրող։ Հեղինակ է «Սով» (1890, հայ.՝ 1995), «Միստերիաներ» (1892, հայ.՝ 2006), «Պան» (1894, հայ.՝ 1913), «Վիկտորիա» (1898, հայ.՝ 1912), «Աշնանային աստղերի տակ» (1906) հոգեբ., «Կանայք ջրհորի մոտ» (1920), «Վերջին գլուխը» (1923), «Շրջմոլիկները» (1927), «Իսկ կյանքն անցնում է» (1933) և այլ վեպերի, նաև պիեսների և այլ գործերի։ «Երկրի հյութերը» (1917, հայ.՝ 1923) վեպում գյուղ. կյանքը՝ներկայացրել է որպես մարդկության գոյատևման իդեալական ձև։ Հայ. հրատարակվել է նաև «Սիրո ստրուկները» (1998) նովելների ժող–ը։

Նորելյան մրց. (1920)։

ՀԱՄՈՒՆ, լճերի խումբ Իրանի և Աֆղանստանի տարածքներում՝ Սիստանի գետաբերանում՝ մոտ 480 *մ* բարձր–յան վրա՝ Հիլմենդ, Ֆարահրուդ, Հաշրուդ գետերի գետաբերանների ողողատներում։ Գարնանը, միաձուլվելով, վերածվում են 1 միասն. լճի։ Մակերեսը՝ 2–3 հզ. *կմ²*։

ՀԱՄՈՒՄ, բերդ Կիլիկյան Հայաստանում՝ Ամանոսյան (Սև) լ–ների շրջանում՝ Թիլ Համդունի և Սարվանդիքարի միջև՝ բարձր ժայռի վրա։ XII դ–ի 1–ին կեսին Հ. գրավել են բյուզանդացիները, 1165–ին հայերը վերագրավել են այն։ 1269–ին ավերվել է երկրաշարժից։

ՀԱՄՔԱԲՈՒԹՅՈՒՆ (պարսկ.՝ համքար – գործակից), արհեստավորների և առևտրականների միություն Ասիայի և Եվրոպայի մի շարք երկրներում։ Այսրկովկասում և Արլ. Հայաստանում միությունը կոչվել է Հ., իսկ Թուրքիայում և Արմ. Հայաստանում՝ էսնաֆություն։ Արմ. Եվրոպայում Հ–ները ձևավորվել են IX–XIII դդ–ում, Այսրկովկասում և Հայաստանում՝ X դ–ում, Փոքր Ասիայում՝ XVI դ–ում։ Հ–ում սովորաբար համախմբվել են արհեստավորներն ու առևտրականները։

ՀԱՅ Ա.ԶԱՏ Ա.Բ.Վ.ԵՄՏԱԳԵՏՆԵՐՈՒ ՄԻՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է Փարիզում՝ Ռաֆայել *Շիշմանյանի* (նախագահ) նախաձեռնությամբ, գործել է 1931–47–ին (ընդհատումներով)։ Կազմակերպել է դասախոսություններ, ցուցահանդեսներ, այցելություններ թանգարաններ, երեկույթներ ևն։ Կազմում՝ նկարիչներ՝ Կ. (Շաղ) Ադամյան, Է. Շահին, Գ. Շիլյան, Գառզու, Ս. Խաչատուրյան, քանդ.՝ Հ. Գյուրջյան և ուր.։

ՀԱՅ Ա.ԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԼԵԳԵՆԴ, կրոն. քողի տակ դրսևորված ազատագր. գաղափարախոսություն։ Հորինվել է հայկ. պետականության կորստից հետո՝ օտարերկրյա երկարատև լծի, բնիկ ազգաբնակչության հարկադրյալ արտագաղթի և օտարամուտ տարրերի ներգաղթի պայմաններում։ Հնագույն դրսևորումներից են Ներսես Պարթևին և նրա որդի Սահակ Պարթևին վերագրվող «տեսիլները»։

ՀԱՅ Ա.ԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ 1919, 1920, 1–ինը տեղի է ունեցել փետր. 24–ապրիլի 9–ը Փարիզում։ Հրավիրվել է Ազգ. պատվիրակության (նախագահ՝ *Պողոս Նուբար* փաշա) նախաձեռնությամբ։ Վավերացրել է 1919–20–ի *Փարիզի խաղաղության համաժողովին* ներկայացված հայկ. պահանջների հուշագիրը։ 2–րդը տեղի է ունեցել մայիսի 5–հուլիսի 13–ին Փարիզում։ Քննարկվել են Ազգ. պատվիրակության զեկուցումը, պատվիրակության բժշկ., քարոզչ., կազմակերպչ. հանձնաժողովների տեղեկագրերը, Կիլիկիայի կացությանը և ձեռնարկվել իք միջոցառումներին վերաբերող հարցեր։ Ընտրվել է Ազգ. պատվիրակության նոր կազմ։

ՀԱՅ Ա.ԶԳԱՅԻՆ ՃԱԿԱՏ (ՀԱՃ), հայ հայրենասերների հակաֆաշիստ. ընդհատակյա կազմ–յուն 1942–45–ին։ Ստեղծվել է ֆրանսիահայ կոմունիստների նախաձեռնությամբ։ Ֆրանսիայի ազատագրման ժամանակ ՀԱՃ–ի շարքերում եղել է 10 հզ. հայ։

ՀԱՅ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է 1927–ին Երևանում՝ *Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի* մեջ չմտնող, բայց խորհրդ. կարգերը համակրող գրողների ու գրաքննադատների նախաձեռնությամբ։ Անդամներից էին Դերենիկ *Դեմիրճյանը* (նախագահ), Ստեփան Զորյանը, Վահան Թոթովենցը, Մկրտիչ Մանվելյանը, Սիմեոն Հակոբյանը, Արսեն Տերտերյանը, Խորեն Սարգսյանը, Տիգրան Հախումյանը և ուր.։ 1929–ին երկուսի միավորումով ստեղծվել է Հայաստանի խորհրդ. գրողների դաշնությունը։ Ինքնուրույն գոյությունը դադարեցրել է 1931–ին։

«ՀԱՅ ԱՇԽԱՐՀ», պատմամշակութ. ամսաթերթ (1937–38, Բրյուսել՝ հայ., ֆրանս.)։ Բելգիայի հայ կաթոլիկ եկեղեցու հրտ–յուն։

«ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ», անսամբլ։ Գործել է 1927–31–ին Երևանում (հիմնադիր–ղեկ.՝ Շարա *Տալյան*)։ Կազմում՝ երգիչներ՝ Հ. Տալյան (Շ. Տալյանի եղբայրը), Հ. Տրդատյան, թառահար՝ Ս. Թարիվերդյան, քամանչահար՝ Վ. Խշտոյան։ Երկացանկում՝ Սայաթ–Նովայի, Շիրինի, Ջիվանու, Խայաթի, Շերամի և այլ աշուղների երգերից։

ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՔՈԼԵՋ, երկսեռ երկրորդ. վարժարան։ Հիմնադրվել է 1923–ին Բեյրութում։ Մինչև 1933–ը՝ հայ մանչերու ավետարան. բարձրագույն վարժարան,

մինչև 1950-ը՝ երկսեռ բարձրագույն վարժարան: Ուսման տևողությունը՝ 12 տարի:

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ, հայ կերպարվեստագետների 1-ին միավորումը: Հիմնադրվել է 1916-ին Թիֆլիսում. մասնակցել են Ե. Թադևոսյանը (նախագահ), Մ. Սարյանը, Փ. Թերլեմեզյանը, Ս. Խաչատուրյանը, Գ. Լևոնյանը և ուր.: Համախմբել և ցուցահանդեսների մասնակից է դարձրել նաև Ռուսաստանի և արտերկրի հայ արվեստագետներին: Երևանում Հայաստանի կերպարվ-ից աշխատողների ընկ-յան հիմնադրումից (1923) հետո վերածվել է *Հայարտրան* բաժանմունքի:

ՀԱՅ ԲԱՆՎՈՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ, Կովկասի բանվոր հեղափոխականների 1-ին կազմ-ներից: Գործել է Թիֆլիսում 1892–95-ին: Հրատարակել է *«Ազատ Հայաստան»* թերթը: 1894-ին պառակտվել է ազգայն. և հեղ. թևերի: 1895-ին ցար. ոստիկանությունը ոչնչացրել է:

ՀԱՅ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՔՆԱՋԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, սփյուռքահայ 1-ին կոմ. կազմ-յունը: Ստեղծվել է 1919-ին Պլովդիվում (Բուլղարիա): Նպատակը Ռուսաստանում Հոկտ. հեղ-յունից հետո բուլղարահայ աշխատավորության շրջանում կոմ. գաղափարները տարածելն էր, հեղ. պայքարը կազմակերպելը:

«ՀԱՅ ԲԺԻՇԿ», բժշկ., առողջապ. և գիտ. ամսաթերթ (1924–25, Բոստոն): Տնօրեն-խմբ.՝ Հովհաննես Ծովիկյան:

«ՀԱՅ ԲՈՅԺ», բժշկ. և առողջապ. պարբերաթերթ (1934–40, 1945–67, Փարիզ): Տնօրեն-խմբ.՝ Շավարշ *Նարդունի*:

«ՀԱՅ ԲՈՒԺԱԿ», բժշկ. և առողջապ. ամսաթերթ (1920–25, Կ. Պոլիս, ապա՝ Ալեքսանդրիա, 1921-ին՝ «Դարման-Հայ բուժակ»): Խմբ-ներ՝ Մկրտիչ Գարակյոզյան, Հ. Թաշչյան:

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ, 1. Էջմիածնի համագումարը հրավիրվել է 1915-ի մարտի 1–2-ը: Նպատակը Արմ. Հայաստանից փախած հայ գաղթականներին օգնություն կազմակերպող բոլոր բարեգործ. կազմ-յուններին միավորել էր: 2. Պետրոգրադի համագումարը տեղի է ունեցել 1916-ի մայիսի 10–12-ին: Նպատակը հայ գաղթականներին օգնող համառուսաստանյան բոլոր կազմ-յունների ջանքերի միավորումն էր:

ՀԱՅ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ, Հայ գրողների միություն, Խորհրդ. Հայաստանի 1-ին գր. միավորումը: Հիմնադրվել է 1921-ին Երևանում՝ Ցոլակ Խանզադյանի, Պողոս Մակինցյանի, Հարություն Սուրխաթյանի, Տիգրան Հախումյանի և ուր. նախաձեռնությամբ: Գործել է մինչև *Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի* ստեղծումը՝ 1922-ը:

ՀԱՅ ԳԵՂԱՐՎԵՍՏԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է 1920-ին Կահիրեում: Նպատակը տեղի հայ երիտասարդներին համախմբելն ու նրանց գեղ. ճաշակը բարձրացնելն է (ունի թատերախումբ, երաժշտ. և կերպարվ-ի բաժիններ): Հ. գ. մ-յանը կից գործել է Հայ ուսանող. միություն: 1947-ին միացել է ԹՄՄ-ին՝ որպես մշակութ. կազմ-յուն:

ՀԱՅ ԳԻՆԵԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ, իրավաբ. անձանց միություն: Հիմնադրվել է 2001-ին: Հետազոտում և քարտեզագրում է այգիները, մշակում ՀՀ-ում խաղողագինեգործության զարգացման ծրագրեր, ճյուղի զարգացման օրենքներ և ենթաօրենսդր. ակտերի նախագծեր են:

«ՀԱՅ ԳԻՐ», գեղ., հաս-գիտ. ամսագիր (1938–44, Բեյրութ): Տնօրեն-խմբ.՝ Վազգեն Այգունի (Պաղճյան):

«ՀԱՅ ԳԻՐ», գրկ-յան և արվ-ի պարբերաթերթ (1946, Աթենք): Խմբ-հրտ.՝ Վահան Դաքեսյան:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է 1926-ին Երևանում՝ Աշոտ Աթանասյանի (Սալմա), Ստեփան Կանայանի, Էմին Տեր-Գրիգորյանի և ուր. նախաձեռնությամբ, որոնք պաշտպանում էին «արվեստը քաղաքականությունից դուրս է» սկզբունքը: Հ. գ. ը-յան անդամները չեն մտել 1929-ին ստեղծված Հայաստանի խորհրդ. գրողների դաշնության մեջ: Կարճ ժամանակ անց կազմալուծվել է:

«ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ», գր-գեղ., գիտ. ամսագիր (1911–14, Զմյուռնիա): Խմբ-հրտ.՝ Զարեհ Գազազյան:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է 1955-ին Նյու Յորքում: Նպատակը հայ գրկ-յանը ծառայելն է, հայ գրողներին նյութապես ու բարոյապես օժանդակելը, գր. մրց-ներ շնորհելը: 1956–80-ին հրատարակել է «*Դիր ու գիրք*» հանդեսը:

«ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐՔԱՐՎԵՍ», թեմատիկ հանրագիտարան, տպագրվել է հայ գրատպության 500-ամյակի առիթով (2015, «Հայկական հանրագիտարան. հրատարակչություն»): Ամփոփում է հայ ձեռագիր և տպագիր գրքի ստեղծման պատմությունը, պատմ. կարևորության հրտ-յունները, ներկայացնում արդի վիճակն ու զարգացման միտումները: Գլխ. խմբ.՝ Հովհաննես Այվազյան:

«ՀԱՅ ԳՐՈՂ», գր., հաս., մշակութ. շաբաթաթերթ (1991, Երևան): ՀԳՄ պաշտոնաթերթ: Խմբ-ներ՝ Բագրատ Ալեքյան, Հովհաննես Մելքոնյան:

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, Հայ գրողների ընկերություն, Կովկասի հայոց գրական ընկերություն: Հիմնադրվել է 1912-ին Թիֆլիսում: Վարչության նախագահ՝ Հովհաննես *Թումանյան*: Նպատակը գր. ֆոնդի ստեղծումով ընկ-յան անդամներին նյութ. օժանդակություն ցուցաբերելն էր, հեղինակ. իրավունքները պաշտպանելը, հայ և համաշխ. գր-հաս. կյանքի նշանակալի իրադարձություններին մասնակցելը: Վրաստանում խորհրդ. կարգերի հաստատումից (1921) հետո վերակազմավորվել է և կոչվել Հայ գրչի մշակների միություն (գործել է մինչև 1923-ը):

ՀԱՅ ԴԱՏ, հայ ժողգ-ի իրավունքներն իր ընօրրանում վերահաստատելու, հայոց պետականությունը վերականգնելու և մեկ միասն. հայրենիք կերտելու գաղափարախոսություն և շարժում: Ձևավորվել է Մեծ եղեռնից հետո, երբ Արմ. Հայաստանն ամբողջությամբ հայաթափվել էր, Արլ. Հայաստանի առանձին տարածքներ նրանից խլվել և կցվել են հարևան հանրապետություններին: Հ. դ-ի հետապնդման ջանքերի համադրման նպատակով 1944-ին ՀՅԴ-ն կազմավորել է Հայ դատի հանձնախմբեր, որոնք *Հայկական հարցի* պահանջատերերն են առանձին երկրներում: Աջակցում են *Հայոց ցեղասպանությունը* դատապարտող օրենսդր. ակտերի ու բանաձևերի ընդունման գործընթացին, պայքարում պատմ. Հայաստանի հայկ. հուշարձանների և մշակութ. այլ արժեքների ոչնչացման դեմ, սատարում արցախահայության պայքարին: Ջգալի ավանդ ունեն ԱՄՆ-ի հանձնախմբի Արլ. և Արմ. բաժանմունքները. գրասենյակներ կան Վաշինգտոնում, Ուոթերթաունում, Բոստոնում, Լոս Անջելեսում, Սան Ֆրանցիսկոյում, այլ հայաշատ ք-ներում: Հայ ազգ. կոմիտեներ են ստեղծվել նաև Եվրոպայի, Մերձ. Արևելքի, Լատ. Ամերիկայի մի շարք երկրներում, Ռուսաստանում, 1991-ին՝ ՀՀ-ում:

«ՀԱՅ ԴԱՏ» (“The Armenian Cause”), ազգ., քաղ. պարբերաթերթ (1984-ից, Մինրեապ.՝ անգլ.): Կանադայի Հայ դատի հանձնախմբի պաշտոնաթերթը:

«ՀԱՅ ԴՊՐՈՑ», մանկավարժ. ամսագիր (1933–35, Կահիրե, 1938, Ալեքսանդրիա): Եգիպտահայ ուսուցչ. միության հրտ-յուն: Խմբ.՝ Բենիամին Թաշյան:

ՀԱՅ ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ (Armenian Numismatic Society), գործել է Լոս Անջելեսում 1971–2015-ին: Սկզբում՝ Հայկ. դրամի ակումբ, 1972–74-ին՝ Դրամագիտ. և գեղ. ընկերակցություն: 1975–2014-ին լույս է ընծայել «*Հայ դրամագիտական հանդես*»-ը, 1979-ին հիմնադրել է «Հատուկ հրատարակություն» մատենաշարը: 1993-ին ստեղծել է «Հայ դրամագիտական հիշատակային պարգևներ» հիմնադրամը (ի հիշատակ դրամագետներ Մ. Աբգարյանի, Ա. Տոնապետյանի և Ն. Ժամկոչյանի):

2015-ից գործում է Հայ դրամագիտ-յան և հնագիտ-յան ընկերակցությունը (Armenian Numismatic and Antiquities Society): Ղեկ-ներ՝ Լևոն Սարյան և Չակ Հաջինյան: Հրատարակում է «Հայ դրամագիտական հանդես»-ը:

«ՀԱՅ ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ», եռամսյա պարբ. [1975–2014, Փիքո Ռիվերա (Կալիֆոռնիա)՝ հայ., անգլ.]: ԱՄՆ-ի *Հայ դրամագիտական ընկերակցության* պաշտոնաթերթը:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՅԱՑ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ ՀԽՍՀ ՆԽ-ին առընթեր, կրոնի նկատմամբ խորհրդ. պետության քաղ-յուն իրականացնող մարմին: 1943–91-ին հսկել է խղճի ազատությունը երաշխավորող ԽՍՀՄ և ՀԽՍՀ սահմանադր. նորմերի կատարումը, կրոնի վերաբերյալ ԽՍՀՄ օրենքների կիրառումը, իրազործել է կապը կառ-յան և կրոն. կազմ-յունների միջև: ՀՀ-ում այդ գործառույթն իրականացնում է *Կրոնի գործերի և ազգային փոքրամասնությունների խորհուրդը*:

ՀԱՅ ԵՐԱԺԻՇՏ-ՏԵՍԱԲԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, գործել է 1919–21-ին Թիֆլիսում: Նպատակը հայ երաժշտ. մշակույթի զարգացմանը նպաստելն էր: Մասնակցել են Ա. Ադամյանը, Ք. Քուշնարյանը, Ս. Բարխուդարյանը, Գ. Սյունին (Միրզայան) և ուր., պատվ. անդամ էր Ա. Սպենդիարյանը:

«ՀԱՅ ԵՐԳ», 1. երաժշտ. միություն, երգչախումբ: Գործել է 1925–34-ին (ընդհատումով) Նյու Յորքում (հիմնադիր-ղեկ.՝ Միհրան *Թումաճան*): Երկացանկում՝ Կոմիտասի, Մ. Եկմալյանի, Է. Մանասի, Բ. Կանաչյանի, Վ. Սրվանձտյանի, Մ. Թումաճանի հոգևոր և ժող. երգերի մշակումներ են: 2. Երաժշտ. ընկ.: Գործել է 1961–65-ին (իմնադիրների՝ Լյուդվիգ *Բազիլ*, Ա. Աղաբեկյան, Վ. Խոջայան) Թեհրանում, կազմակերպել է երաժշտ. դասընթացներ, համերգներ, հրատարակել հանրամատչելի («Հայ դասական երաժշտություն»,

1961, «Հայոց եկեղեցական եղանակներ», 1962, ևն) գրկ., պատրաստել և հովանավորել է հայ երիտասարդ երաժիշտների:

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ, մարզ. և մշակութ. միություն ՀԲԸՄ-ի կազմում: Հիմնադրվել է 1931-ին Բեյրութում՝ Բարկեն *Կյուլեսերյանի* նախաձեռնությամբ՝ Մերձ. Արևելքում Ամերկոմի հովանավորությամբ գործող Չափահաս որբերի միության հիմքի վրա: 1933-ից գործում է ՀԲԸՄ-ի հովանավորությամբ: Նպատակը Սփյուռքի հայ երիտասարդների հայեցի դաստիարակությունն է, ազգ. և հոգևոր արժեքների պահպանումն ու զարգացումը: Մասնաճյուղեր ունի Լիբանանում, Սիրիայում, Հորդանանում, Կիպրոսում, ԱՄՆ-ում, Կանադայում, Արգենտինայում և այլուր:

«ՀԱՅ ՋԻՆՎՈՐ», շաբաթաթերթ (1992-ից, Երևան, № 1–9-ը՝ «Զինվոր»): ՀՀ ՊՆ պաշտոնաթերթ: Խմբ-ներ՝ Գագիկ Մինասյան, Վրեժ Իսրայելյան, Մհեր Հրաչյան, Սեյրան Շահսուվարյան, Էդվարդ Ոսկանյան, Սամվել Հարությունյան (2017-ից):

«ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔ», բարոյական, գիտակրթ., դպրոց. ամսագիր (1969–85, Վենետիկ): ՎնտՄՄ հրտ-յուն: Հաջորդել է «*Միսիթարեան ընտանիք*» (1947–67, 1960–62-ին՝ «Ընտանիք») ամսագրին: Խմբ-ներ՝ Վահան Հովհաննիսյան, Հակոբ Չենթեյան, Մեսրոպ Ճանաշյան, Տաճատ Յարդըմյան, Պողոս-Լևոն Զեքիյան, Հարություն Պզտիկյան:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀԺԿ), ազատական կուս-յուն: Հիմնադրել են հայ կադետները 1917-ի ապրիլի 11-ին Թիֆլիսում: 1917-ի սեպտ-ին կայացել է ՀԺԿ հիմնադիր համագումարը (բյուրոյի նախագահ՝ Միքայել *Պապաջանյան*): ՀԺԿ-ն իրեն հայտարարել է ապադասակարգ., ազգ. կուս-յուն: Հրատարակել է «Ժողովրդի ձայն» (1918–19), «Ժողովուրդ» (1918–20) պաշտոնաթերթերը: 1921-ի փետր. հակախորհրդ. ապստամբության պարտությունից հետո ՀԺԿ ղեկ-ները հեռացել են Հայաստանից: 1921-ի հոկտ-ին սահմանադիր ռամկավար., ազատական (նախկին վերակազմյալ ինչպայանները) կուս-յունների և այլ խմբավորումների արտերկրում ապրող անդամները միավորվել են՝ կազմելով *Ռամկավար ազատական կուսակցությունը*:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԵՐ, ավանդաբար փոխանցվող կրոնաեկեղեց. և ժող. տոներ (Նոր տարի, Սբ Ծնունդ, Տյառնընդառաջ, Սբ Հարություն, Համբարձում, Խաչվերաց ևն): Հիմնականում ծագել են նախաքրիստ. շրջանում և հետագայում պահպանել ինագույն ծիսակարգին ու հավատալիքներին առնչվող սովորույթներ ու արարողություններ: Միաժամանակ հարմարեցվել են քրիստ. գաղափարախոսությանն ու տոնացույցին:

«ՀԱՅ ԽՕՄՆԱԿ», բարոյագիտ., գր., կրոն. ամսաթերթ (1924–39, Կ. Պոլիս): Խմբ-ներ՝ Արտավազդ *Սյուրմեյան*, Մեսրոպ Նարոյան, Զարմայր Կեզյուրյան: 1932–34-ին հրատարակել է «Հայ խօսնակ մանկանց» հավելվածը:

«ՀԱՅ ԾԵՐՄԱՆՈՑ», եռամսյա տեղեկատու պարբերագիրք (1952–2012, Հալեպ): Հալեպի հայ ազգ. ծերանոցի խնամակալության հրտ-յուն:

«ՀԱՅ ԿԵԱՆՔ», ազգ., հաս., կրոն., գր. շաբաթաթերթ (1985-ից, Գլենդել՝ հայ. և անգլ.):

«ՀԱՅ ԿԵԴՐՈՆ», կրոն., գր., մշակութ. ամսագիր (1932–70, 1997-ից, Բուենոս Այրես՝ հայ., իսպ.): Հվ. Ամերիկայի ՀԱԵ հոգաբարձության պաշտոն. հրտ-յուն: Խմբ-ներ՝ Իսրայել Արսլան, Գարեգին արք. Խաչատուրյան, Հարություն վրդ. Մուշյան, Սիոն արք. Մանուկյան, Բարկեն արք. Ապատյան:

«ՀԱՅ ԿԻՆ», 1. կիսամսյա հանդես (1919–32, Կ. Պոլիս): Տնօրեն-խմբ.՝ Հայկանուշ Մառք: 2. Գր-հաս. ամսաթերթ (1947–49, Փարիզ): Հայ կանանց միության հրտ-յուն: Խմբ.՝ Զարեհ Որբունի:

ՀԱՅ ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ, *ֆիդայական շարժում*, թուրք. բռնատիրության դեմ արևմտահայ ազգ-ազատագր. զինված պայքարի ձև (1880-ական թթ-ի կես–XX դ-ի սկիզբ): Հայդուկ. 1-ին խմբերն ստեղծվել են Տարոնում, Սասունում, Վասպուրականում, Կեսարիայում: Առավել հայտնի են *Մարգար Վարժապետի*, *Արաթոյի*, Ռուբեն *Շիշմանյանի*, Գալուստ *Արխանյանի*, Արամ *Աչղըպաշյանի* խմբերը, «*Փոքր Հայքի կազմակերպությունը*» ևն: 1890-ական թթ-ին վերելք է ապրել պայմանավորված Հնչակյան ու Դաշնակցություն կուս-յունների ստեղծումով: Կուս-յունները ֆիդայիներին համարել են իրենց մարտ. ուժը, իսկ ֆիդայիներն ընդունել են նրանց գաղ. ղեկավարությունը: Շարժումն ունեցել է համազգ. բնույթ: Արդուլհամիդյան ջարդերի ժամանակ (մեծ չափերի է հասել 1894–96-ին) ֆիդայիները կազմակերպել են հայերի ինքնապաշտպյունը Խլաթում, Սասունում, Վանում, Շապին-Գարահիսարում և այլուր: Հայտնի են Բաբշենի (1898), *Խապուսուրի* (1899), Սպաղանքի (1899, 1900), *Ցրոնքի* (1899), Բերդակի, *Նորշենի*, Առաքելոց վանքի (երեքն էլ՝ 1901) հայդուկային կռիվները: Եղել են նաև առանձին թուրք. ու քրդ. խմբեր ոչնչացնելու նպատակով հայդուկ. գործողություններ, որոնցից առավել հայտնի է *Խանասորի արշավանքը* (1897): 1903-ի մայիսի 25-ին անցել է ռուս-թուրք. սահմանը և Սասուն է հասել *Թորգոմի* «Մրրիկ» հեծելախումբը: 1904-ի *Սասունի ապստամբությունից* հետո, մնալով որպես առանձին խմբերի գործողություններ (Այվաղիկյի կռիվ 1905, *Մուրուխի կռիվ* 1907), Հ. հ. շ. անկում է ապրել: Հ. հ. շ-ման նշանավոր դեմքերից են *Աղբյուր Սերոբը*, *Անդրանիկը*, *Գևորգ Չավուշը*, *Նիկոլ Դումանը*, *Ժիրայրը*, *Հրայրը*, *Սպաղանաց Մանկարը*, *Վազգենը*, *Գուրգենը*, *Մեթսափացի Մուրադը*, *Քեռին*, *Իշխանը* և ուր.:

Հ. հ. շ. ժողդ-ին նախապատրաստել է ազատագր. պայքարի, զսպել է թուրք պաշտոնյաներին ու քուրդ աղաներին, մեղմել և երբեմն վերացրել է նաև նրանց գործադրած բռնությունները:

ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ 1827, Ռուսաստանի կազմում Արլ. Հայաստանում ինքնավարություն ստեղծելու նախագիծ: Նախագիծը ռուս. արքունիքին ներկայացրել են Խաչատուր Լազարյանը, Կոստանդին Արղությանը և Ալեքսանդր Խուդաբաշյանը: 1828-ին, ռուս-պարսկ. պատերազմում հաղթանակից հետո, հայկ. հողերի մի մասից միայն ստեղծվել է *Հայկական մարզը*:

«ՀԱՅ ՀԱՆԴԷՍ», գր. կիսամսյա հանդես (1902–03, Վենետիկ): Խմբ-հրտ.՝ Արփիար Արփիարյան:

«ՀԱՅ ՀԱՆԴԻՍԱԳԻՏԱԿ», հանրագիտ. պատկերազարդ տեղեկատու (1938–40, Բուխարեստ, 1 հ.՝ 5 գրքով): Բուխարեստի «Գաղութահայ հրատարակչության» հրտ.: Խմբ.՝ *Մկրտիչ Պոտուրյան*, աշխատակցել են Ա. Աբեղյանը, Թ. Ազատյանը, Վ. Թորգոմյանը, Տոնիկևիչը, Վնտ. և Վնն. ՄՄ-ների անդամներ և ուր.: Կազմվել է այբբեն. սկզբունքով, ներառում է հայոց պատմության, Հայաստանի տնտ-յան, աշխարհագրության, հայկ. մշակույթի, գրկ-յան, պարբ. հրտ-յունների վերաբերյալ հոդվածներ, ներկայացված են նաև օտարազգի հայագետներ, երկրներ ու քաղաքներ, որտեղ եղել են հայկ. համայնքներ:

ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԲԱՆԱԿ (անգլ.՝ Armenian Revolutionary Army), քաղ. ընդհատակյա կազմ-յուն: Ներկայացել է որպես հայկ. նոր զինված կազմ-յուն, որն իր պայքարը կենտրոնացնում է միայն Թուրքիայի դեմ՝ ի նպաստ *Հայ դատի*, և այլ շահեր չի հետապնդում: Հակաթուրք. զինված գործողություններով հանդես է եկել 1983–85-ին (1983-ի հուլիսի 27-ին՝ Լիսաբոնում, 1985-ի մարտի 12-ին՝ Օտտավայում թուրք. դեսպանատների գրավման գործողություններ):

ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ, *Հայ յեղափոխական դաշնակցություն* (ՀՅԴ), հայ ազգ. կուս-յուն: Ստեղծվել է 1890-ի հուլիս–օգոստ-ին Թիֆլիսում: Հիմնադիրներ՝ Քրիստափոր *Միքայելյան*, Սիմոն *Զավարյան*, Ստեփան *Զորյան*: Նպատակը ժող-ի ուժերի համախմբումն էր, Արմ. Հայաստանի համար քաղ. և տնտ. ազատություն ձեռք բերելը: Կուս-յան հիմն. խնդիրը *Հայկական հարցի* լուծումն էր: Հրատարակել է *«Դրօշակ»* պաշտոնաթերթը: ՀՅԴ-ի առաջատար քաղ. ուժն էր ՀՀ-ում (1918–20): 1921-ի փետր. ապստամբությունից հետո ՀՅԴ-ն իր գործողությունները շարունակել է արտերկրում: 1990-ի օգոստ. 8-ին այն իր կազմակերպ. ներկայությունը բացահայտել է ՀՀ-ում: 1994-ի դեկտ-ին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանագրով կասեցվել է ՀՅԴ-ի գործունեությունը ՀՀ-ում, որը 1998-ին չեղարկել է ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Կուս-յունը գործում է ՀՀ-ում, ԼՂՀ-ում և Սփյուռքում: Լիբանանում այն ներկայացված է նաև խորհրդարանում՝ Սարտի 8-ի դաշինքի խմբակցության մեջ: ՀՀ ԱԺ-ում ՀՅԴ-ն 2007–12-ին ներկայացված էր 16, 2012-ից՝ 5 պատգմ-ով:

ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, հիմնադրել է Ստեփան *Լուսիկյանը* 1997-ին Երևանում: Նպատակը հայ հոգևոր երգն ուսումնասիրելն ու տարածելն է: Կազմակերպում է համերգաշարեր ՀՀ եկեղեցիներում և վան. համալիրներում («Հայ հոգևոր երաժշտության երեկո», «Հայ ժողովրդական երաժշտություն», «Բարոկկո երաժշտության երեկո», «Երիտասարդ կատարողներ» ևն), հրատարակում նոտային գրկ., «Մանրուսում» միջազգ. երաժշտագիտ. տարեգիրքը ևն:

«ՀԱՅ ՁԱՅՆ», քաղ., տնտ. և գր. պարբերաթերթ (1918–19, Հալեպ, 1919–22, Ադանա): Հայ ռամկավար կուս-յան Կիլիկիո շրջ. վարչության հրտ-յուն (1921-ին): Տնօրեն-խմբ.՝ Սեդրակ Կեպենյան:

«ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ» («Documenti di architettura Armena»), հայ միջնադար. ճարտ-յանը նվիրված մատենաշար (1968–98, Վենետիկ): Ընդգրկում է պատմ. և ճարտ. հակիրճ տեղեկություններ, լուսանկարներ, չափագրություններ:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՀՄԸՄ), մարզ., սկաուտ. կազմ-յուն: Հիմնադրվել է 1918–ին Կ. Պոլսում՝ Գրիգոր Հակոբյանի, Տիգրան Խոյյանի, Հակոբ Սիրունու և ուր. նախաձեռնությամբ: ՀՄԸՄ-ն 1922–ին Թուրքիայում լուծարվել է, սակայն շարունակել է իր առաքելությունը Սփյուռքում: Գործունեության մեջ կարևոր տեղ են գրավում սկաուտ. բանակումները, համագաղութ. մարզ. մրցաշարերը: Ունի ավելի քան 80 մասնաճյուղ, 1989–ից՝ նաև Երևանում (ներկայում ՀՀ–ում՝ 17): Լույս է ընծայել շուրջ 3 տասնյակ պարբ–ներ տարբեր երկրներում: Բեյրութում 1980–ից լույս է տեսնում ՀՄԸՄ կենտր. վարչության «*Մարզիկ*» պաշտոնաթերթը: Տես նաև *Սկաուտություն*:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՀՄՄ), մարզ. երիտասարդ., սկաուտ. կազմ-յուն: Հիմնադրվել է 1921–ին Հալեպում: Գործում է ՄԴՀԿ-ի հովանավորությամբ: Մասնաճյուղեր ունի Սփյուռքի հայաշատ համայնքներում, նաև ՀՀ–ում: Անցկացնում է միջմասնաճյուղ. մրցաշարեր, նաև տվյալ երկրների հավաքականների կազմում ՀՄՄ-ի մարզիկները մասնակցում են միջազգ. մրցումների, օլիմպ. խաղերի: Բեյրութի «Հոմենմեն» ֆուտբոլի թիմը Լիբանանի բազմակի չեմպիոն է և գավաթակիր:

«ՀԱՅ ՄԱՐՏԻԿ», կիսամսյա թերթ (1936–38, Մարսել): Դաշնակից և հայկ. բանակների նախկին կամավորների միության պաշտոնաթերթը: Խմբ–ներ՝ Սմբատ Բորոյան (Սմբատ Զորավար), Մանուկ Ավետյան:

ՀԱՅ ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԻԿՆԵՐԻ ՈՒ ԴԻՄԱԴՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է 1922–ին Փարիզում: Միավորել է Ֆրանսիայում բնակվող ԱՀՊ–ին, այնուհետև՝ ԵՀՊ–ին մասնակից հայ նախկին ռազմիկներին ու կամավորներին: Գործուն մասնակցել է ֆրանսահայ համայնքի հաս–քաղ. կյանքին: Միության նախաձեռնությամբ (նախագահ՝ Անտուան Բաղդիկյան) Փարիզում տեղադրվել է Մեծ եղեռնին նվիրված խաչքար (2010):

ՀԱՅ ՆՈՐ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ (անգլ.՝ New Armenian Resistance), ընդհատակյա զինված քաղ. կազմ–յան: Գործել է 1977–82–ին: Գործողություններն ուղղված էին թուրք. և արտերկրում տեղակայված խորհրդ. հաստատությունների դեմ: Իրեն հայտարարել է Հայաստանում գործող (ընդհատակյա) Ազգ. միացյալ կուս–յան դաշնակից:

«ՀԱՅ ՇԱՐԺՈՒՄ» («Armenian Action»), ազգ., երիտասարդ., կրթ. պարբերաթերթ (1979–ից, Ֆրեզնո՝ անգլ.): Կալիֆոռնիայի նահանգ. համալսարանի Հայագիտ. ծրագրի և Հայ ուսանող. միության հրտ–յուն:

«ՀԱՅ ՍԻՐՏ», 1. ազգ., հաս–քաղ., գր. շաբաթաթերթ (1925–38, Մարսել): ՀՕԿ–ի հրտ–յուն: Խմբ–արտոնատեր՝ Եղիշե Թորոսյան: 2. Գր–հաս. շաբաթաթերթ (1926–32, Ֆիլադելֆիա): «Հայ սիրտ» հրտչ. ընկ–յան պաշտոնաթերթը: 3. Գիտ., հաս., գր., մանկ. եռամսյա թերթ (1939–ից, Բոստոն՝ հայ., անգլ., ֆրանս., 1939–46–ին՝ «Հայ Կարմիր խաչ», 1946–56–ին՝ «Հայ օգնության միություն»): ՀՕՄ–ի կենտր. վարչության պաշտոնաթերթը:

ՀԱՅ ՍՈՑԻԱԼ–ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՀՍԴՄ), հայ 1–ին ս–դ. կազմ–յունը: Ստեղծվել է 1902–ին Թիֆլիսում՝ Ստեփան *Շահումյանի* և նրա համախոհների նախաձեռնությամբ: Նպատակը հայ պրոլետարիատի քաղ. դաստիարակություն էր և նրան Ռուսաստանի պրոլետարիատի պայքարին մասնակից դարձնելը: ՀՍԴՄ–ն ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի հետ 1902–ին գլխավորել է բանվորների քաղ. ելույթը:

«ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔ», համապարփակ հանրագիտարան աշխարհի շուրջ 70 երկրընթի հայկ. համայնքների մասին (2003, «Հայկական հանրագիտարան. հրատարակչություն»): Գլխ. խմբ.՝ Հովհաննես Այվազյան, պատ. խմբ.՝ Արամ Սարգսյան:

«ՀԱՅ ՎԱՍՏԱԿ», ազգ., առևտր., տնտ. ամսագիր (1931–33, Բոստոն): Խմբ.՝ Մինաս Վերածին:

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (Association Internationale des Ètudes Arméniennes), հայագետների միջազգ. միություն: Հիմնադրվել է 1983–ին Լեյդենի (Նիդեռլանդներ) համալսարանում: Միավորում է տարբեր երկրների 100–ից ավելի հայագետների: Նպատակը *հայագիտության* տարբեր բնագավառների զարգացումը խթանելն է: Հրատարակում է «Նյուալերըը» (անգլ., ֆր.) պարբ–ը, որտեղ հրապարակվում են ֆրանս. և անգլ. նյութեր:

ՀԱՅ ՔՈՒՅՐԵՐԻ ՎԱՐԺԱՐԱՆ, մասնավոր դպրոց Ֆիլադելֆիայում, ունի նախակրթարանից մինչև 8–րդ դասարան: Հիմնադրել են կաթոլիկ քույրերը 1967–ին: Հ. ք. վ–ներ են գործում նաև Լոս Անջելեսում և Բոստոնում:

ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (անգլ.՝ Armenian Relief Society, ՀՕՄ), կանանց բարեգործ. կազմ–յուն: Հիմնադրվել է 1910–ին Նյու Յորքում՝ Խաչատուր *Սալմասյանի* ջանքերով՝ ԱՄՆ–ի հայ կանանց տարբեր կազմ–յունների միավորմամբ: Նախապես կոչվել է ՀՅԴ Կարմիր խաչ: 1915–ին ԱՄՆ–ում և Կանադայում ուներ 32 մասնաճյուղ: 1918–ից գործել է Կ. Պոլսում, հայաշատ այլ վայրերում: 1919–ին միավորվել է Պետ. Կարմիր խաչի հետ և կոչվել Հայաստանի Կարմիր խաչ, 1921–ին՝ Ազգ. Կարմիր խաչի հետ, կոչվել Հայ Կարմիր խաչ: Մեծապես աջակցել է 1924–ի ներգաղթին, 1926–ի Շիրակի և 1931–ի Զանգեզուրի երկրաշարժերից տուժածներին ևն: 1946–ից՝ ՀՕՄ: 1998–ից ՄԱԿ–ի Տնտ. և սոցիալ. խորհրդի անդամ է: 1988–ի Սպիտակի երկրաշարժից հետո ստեղծել է աղետյալների օգնության ֆոնդ, 1991–ին ՀՀ–ում հիմնադրել է շրջ. կազմ–յուն (2000–ից՝ Հայաստանի ՀՕՄ), որը մասնաճյուղեր ունի ավելի քան 60 բնակավայրում: 1996–ից գործում է Արցախում, 2002–ից՝ Ջավախքում: ՀՕՄ–ը 28 երկրում ունի 200 մասնաճյուղ (ավելի քան 18 հզ. անդամ): Կենտր. գրասենյակը՝ Ուոթերթաունում (ԱՄՆ):

ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴ (ՀՕՖ, անգլ.՝ Fund for Armenian Relief), բարեսիր. կազմ–յուն: Ստեղծվել է 1988–ի Սպիտակի երկրաշարժից անմիջապես հետո՝ ՀԱԵ ԱՄՆ–ի Արլ. թեմի նախաձեռնությամբ: Օժանդակել է Հայաստանի մանկապարտեզներին, գիշերօթիկ դպրոցներին, մանկատներին և ծերանոցներին, բացել է բարեգործ. ճաշարաններ ևն: 1996–ին Գյումրիում բացվել է ՀՕՖ–ի Շիրակի ներկայացուցչությունը, 1997–ին՝ ՀՕՖ–ի Ստեփանակերտի մասնաճյուղը: Իր գործունեության ընթացքում ՀՕՖ–ը ՀՀ–ին և ԼՂՀ–ին տրամադրել է ավելի քան 200 մլն դոլարի օգնություն: Կենտր. գրասենյակը՝ Նյու Յորքում:

«ՀԱՅԱԳԻՏԱԿ», հրտչ–յուն: Հիմնադրել է Հայագիտ. բարեգործ. ընկ–ը 1991–ին Երևանում: Նախագահ՝ Ալբերտ *Իսոյան*: Հրատարակում է հայագիտ. աշխ–ներ, «Գիր» մատենաշարը, բառարաններ, տեղեկատուներ, պատկերագրքեր, վանականոտեներ, փայտե և այլ կազմերով հուշանվեր. գրքեր:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, Հայագիտական ուսմանց և հետազոտությունների համազգային ընկերություն (անգլ.՝ National Association for Armenian Studies and Research): Հիմնադրվել է 1955–ին Բոստոնում (ԱՄՆ)՝ մի խումբ հայ մտավորականների ու Հարվարդի համալսարանի պրոֆեսորների նախաձեռնությամբ: Նպատակը հայ ժողդ–ի պատմությունն ու մշակույթն ուսումնասիրելն է և դրանք միջազգ. հաս–յանը ծանոթացնելը: Օժանդակում է ԱՄՆ–ի մի շարք համալսարաններում հայագիտ. ամբիոններին ու դասընթացներին, կազմակերպում է գիտաժողովներ, հրատարակում է հայագիտ. աշխ–ներ (անգլ.), 1975–ից՝ «*Ջրնսըլ օֆ Արմինիըն Սթադիս*» հայագիտ. հանդեսը: Կենտրոնը՝ Քեմբրիջում (ԱՄՆ):

«ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ», եռամսյա–քառամսյա գիտ. հանդես (2003–ից, Երևան՝ հայ., ռուս.): ՀՊՄՀ հրտ–յուն: Հիմնադիր–խմբ.՝ Սմբտին Գիլավյան:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ ԵՊՀ–ի, ստեղծվել է 2008–ին՝ հայագիտ. հետազոտությունների կենտրոնի (հիմն.՝ 1968) հիմքի վրա: Ուսումնասիրվող ուղղություններն են՝ Հայկ. հարցի և Հայոց ցեղասպանության պատմությունը, մատենագիտ–յունը, հայ հնագիտ–յունը, Հայաստանի պատմ. աշխարհագրության, քարտեզագրության, հայագիտ. պատմագիտ. և աղբյուրագիտ. ժառանգության ուսումնասիրությունը, վիրտուալ հայագիտ–յունը, հայ–օսմ., հայ–վրաց., հայ–քրդ. հարաբերությունները: Հրատարակում է հայագիտ. երկեր, հոդվածներ, 2014–ից լույս է ընծայում «*Հայագիտության հարցեր*» հանդեսը: Տնօրեն՝ Արամ Սիմոնյան:

«ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ», հայագիտ. քառամսյա հանդես (2014–ից, Երևան՝ հայ., ռուս., անգլ.): ԵՊՀ հայագիտ. հետազոտությունների ինստ–ի հրտ–յուն: Գլխ. խմբ.՝ Արամ Սիմոնյան, պատ. քարտուղար՝ Վարուժան Պողոսյան:

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, հայ ժողդ–ի պատմությունը, մշակույթը, լեզուն, եկեղեցին ու դավանանքը, աշխարհագր. միջավայրը, քաղաքակրթությունն ու ածանցյալ իրողություններն ուսումնասիրող գիտ. համակարգ: Հ. առանձին պարբերաշրջանների շարունակական ամբողջություն է՝ ա. XIII–XVII դդ., բ. XVII–XIX դդ–ի 80–ական թթ., գ. 1880–ական թթ.–1920, դ. 1921–91 թթ.: Պարբերաշրջանների հատկանշ. գիծը հայագիտ. խնդիրների շրջանակի համապարփակությունն է:

ՀԱՅԱՊԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, ավանդաբար ընդունված և ՀԱԵ–ի հեղինակությամբ ուժ ստացած կրոնադավանաբան. սկզբունքների ամբողջությունը: Առաջացել է Համաշխ. քրիստ. եկեղեցու ընդունած դավանանքից: ՀԱԵ–ն ընդունել է Նիկիայի 325–ի, Կ. Պոլսի 381–ի և Եփեսոսի 431–ի ժողովների դավանաբան. սկզբունքները, սակայն մերժել է 451–ի Քաղկեդոնի տիեզերաժողովի՝ Քրիստոսի երկու բնության մասին դավան.

խնդիրը: Քրիստ. միաղավան եկեղեցին այդ ժողովից հետո բաժանվել է միաբնակ (տես *Միաբնակներ*), երկաբնակ (տես *Երկաբնակներ*) և այլ եկեղեցիների: Դվինի 506-ի ժողովը պաշտոնապես մերժել է *քաղկեդոնականությունը* և վավերացրել ՀԱԵ-ի միաբնակ դավանանքը:

«ՀԱՅԱԿ» (Hayak), հայկ. կինոարվ-ի ամենամյա ազգ. մրցանակաբաշխություն և մրց.: Հիմնադրվել է 2012-ին (Ազգ. կինոյի զարգացման հիմնադրամ): Ընդգրկում է ՀՀ-ի, Սփյուռքի, նաև օտարազգի ռեժ-ների հայկ. թեմաներով ֆիլմերը: Ունի 15 անվանակարգ:

«ՀԱՅԱՆՏԱՌ», ՀՀ ԳՆ անտառտնտ-ների համակարգը ղեկավարող ընկ. (մինչև 1999-ը՝ «Հայանտառ» արտադր. միավորում): Հիմնադրվել է 1988-ին՝ Անտառտնտ-յան պետկոմի (1966) վերակազմավորումով (1952–66-ին՝ ՀԽՍՀ անտառտնտ-յան վարչություն):

ՀԱՅԱՍԱ, Հայասա-Ազզի, Խայասա, երկիր Հայկ. լ-աշխարհում՝ Սև ծովի, Եփրատ գետի, Հայկ. Տավրոսի լ-ների և Վանա լճի միջև: Հիշատակվում է մ. թ. ա. XV–XIII դդ-ի խեթ. արձանագրություններում: Ուսումնասիրողների (Է. Ֆոռեր, Գ. Ղափանցյան, Պ. Կրեչմեր, Ն. Ադոնց, Ս. Երեմյան, Գ. Ջահուկյան և ուր.) կարծիքով՝ «Հ.» անվանումը կազմված է «հայ» արմատից, «սա» խեթ. վերջածանցից և նշանակում է հայերի երկիր՝ Հայաստան: Նույն ժամանակաշրջանի՝ մ. թ. ա. XII–XI դդ-ի ասորեստան. արձանագրություններում Հ. հիշատակվում է *Նաիրի* անունով: Խեթ. տերության անկումից հետո վերացել են նաև Հ-ի մասին տեղեկությունները:

«ՀԱՅԱՍԵՐ-Ա.ԶԳԱՍԵՐ», հայրենասիր. խմբակցություն Երևանում 1880-ական թթ-ի սկզբին: Տես նաև *Դպրական գործ 1883*:

ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ, արմենոցիդ: Գործադրել են տարբեր ժամանակներում օսմ. Թուրքիայի կառավարող շրջանները՝ Արմ. Հայաստանի և Թուրքիայի հայաբնակ վայրերում խաղաղ հայ բնակչության նկատմամբ: Եզրույթն առաջին անգամ գիտ. շրջանառության մեջ է դրել արաբ իրավագետ Մետր Մուսա Պրնսը 1967-ին:

ՀԱՅԱՍՏԱՆ, Հայք, Հայոց աշխարհ, Հայոց բնաշխարհ (օտարներն անվանում են Արմենիա, Արմինիա, Սոմխեթի, Էրմենիստան), 1. երկիր Միջին Արևելքում, որտեղ կազմավորվել է, ապրել և իր ազգ. մշակույթն է ստեղծել հայ ժողո-ը: Ընդունված է հայոց պատմության սկիզբը համարել մ. թ. ա. 2492-ը, երբ հայերի նախահայր Հայկը Հայոց ձորում հաղթել է Ասորեստանի թագավոր Բելին և ապահովել իր անկախությունը: Հ-ի տարածքը (շուրջ 400 հզ. *կմ*²) համընկնում է *Հայկական լեռնաշխարհին* և, որպես հասկացություն, վերաբերում է հիմնականում *Մեծ Հայքի* և *Փոքր Հայքի* միասնական տարածքին, թեև հայաբնակ հնագույն տարածքներ են եղել նաև *Կոմմագենեն*, *Ադիաբենեն* և *Օսրոյենեն*, իսկ միջնադարից մինչև 1920-ական թթ.՝ նաև *Կիլիկյան Հայաստանը*:

Վաղ քաղաքակրթության բնօրրաններից է, այնտեղ են ձևավորվել *Արատտան* (մ. թ.ա. XXVIII–XXVII դդ.), *Հայասա* թագավորությունը (մ. թ. ա. XV–XIII դդ.), Նաիրյան երկրները և այլ պետ. կազմավորումներ: Առաջավոր Ասիայում գերիշխող է եղել *Վանի թագավորությունը* (Ուրարտու, մ. թ. ա. IX–VII դդ.): Մ. թ. ա. VI–III դդ-ի Հ-ում Երվանդյանների թագավորությունն էր, մ. թ. ա. II–I դդ-ում՝ Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորությունը: *Արտաշես Ա* վերամիավորել է հայկ. հողերը, կառուցել (մ. թ. ա. մոտ 185) Արտաշատ մայրաքաղաքը, *Տիգրան Բ Մեծը* Հ. դարձրել է աշխարհակալ տերություն: I–V դդ-ում Մեծ Հայքում թագավորել են հայ Արշակունիները. *Տրդատ Գ Մեծը* քրիստոնեությունը հռչակել է (301) պետ. կրոն, *Վռամշապուհի* հովանավորությամբ Մեսրոպ Մաշտոցն ստեղծել է (405) հայոց այբուբենը: 387-ին Մեծ Հայքի թագավորությունը բաժանվել է Հռոմ. կայսրության (արմ. մաս, 389-ին վերացվել է թագավորությունը) և Սասանյան Պարսկաստանի (արլ., մեծագույն մաս) ազդեցության ոլորտների: 428-ին՝ Արտաշես Արշակունու տապալումից հետո, *Արևելյան Հայաստանը* դարձել է պարսկ. տերության *մարզպանություն* (V–VII դդ.): Այդ կարգավիճակի համար հայերն ապստամբել են Սասանյանների դեմ (տես *Վարդանանց պատերազմ*, *Ավարայրի ճակատամարտ* 451, *Վահանանց պատերազմ 482–484*, *Նվարսակի պայմանագիր 484*): 591-ին Հ. վերաբաժանվել է Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Արաբ. նվաճումներից, պարսկա-բյուզ. գերիշխանության թուլացումից հետո Հայոց սպարապետ ու մարզպան *Թեոդորոս Ռշտունին* վերամիավորել է (639) Հ-ի արլ. և արմ. մասերը: Արաբ. խալիֆության տիրապետության ժամանակաշրջանում (VIII–IX դդ.) Հ-ում (ընդգրկվել է «*Արմինիա*» վարչ. միավորի կազմում) բռնկվել են հուժկու ապստամբություններ (703, 748–50, 762, 774–775): Խալիֆության թուլացման շրջանում Հայոց իշխանաց իշխան ու սպարապետ Աշոտ Բագրատունին (*Աշոտ Ա Մեծ*) վերականգնել է Հ-ի անկախությունը, 885-ին ճանաչվել Հայոց թագավոր: Հայ Բագրատունիներից (գահակալել են մինչև 1045-ը, 922-ից կրել շահնշահ Հայոց և Վրաց տիտղոսը) նշանավոր էին *Սմբատ Ա-ն*, *Աշոտ Բ Երկաթը*, *Աշոտ Գ Ողորմածը* (կառուցապատել ու 961-ին մայրաքաղաք է հռչակել *Անին*), *Սմբատ Բ Տիեզերակալը*, *Գագիկ Ա-ն* (թագավորությունը հասցրել է վերելքի գագաթնակետին): XI դ-ի 2-րդ կեսին Հ. գրավել են սելջուկ- թուրքերը: Հայ-վրաց. զինակցությամբ ազատագրվել է Հյուսիսարլ. Հ., ստեղծվել *Զաքարյանների իշխանապետությունը* (XII դ-ի վերջ–XIV դ-ի կես): Միջնադարում հայոց վերջին ազգ. պետականությունը *Կիլիկիայի հայկական պետությունն* էր (1080–1375): XIII դ-ի 1-ին կես–XIV դ-ի 1-ին կեսին Հ. մոնղ. լծի տակ էր, XIV դ-ի 2-րդ կեսին երկրում հաստատվել են թուրքմենները, 1386–1403-ին այն ենթարկվել է *Լանկ Թամուրի* արշավանքներին, XV դ-ում՝ *կարա-կոյունլուների* ու *ակ կոյունլուների* տիրապետության ներքո էր: XVI–XVIII դդ-ում Հ. եղել է թուրք-պարսկ. պատերազմների թատերաբեմ: 1555-ի հաշտության պայմանագրով բաժանվել է Սեֆյան Պարսկաստանի (արլ. մաս) և Օսմ. կայսրության (արմ. մաս) միջև: XVII դ-ի սկզբին շահ Աբբաս I-ը Պարսկաստան է բռնագաղթեցրել շուրջ 350 հզ. հայ: Մայրաքաղաք Սպահանի մոտ կառուցվել է հայկ. քաղաք՝ *Նոր Ջուղան*: 1639-ի պայմանագրով Հ-ի վերաբաժանման սահմանագիծը գրեթե անփոփոխ է մնացել մինչև Արլ. Հ-ի միացումը Ռուս. կայսրությանը (1828): Լեռն. շրջաններում (Արցախ, Սյունիք, Շատախ, Մոկս, Սասուն, Զեյթուն) հայերը պահպանել են տեղ. ինքնուրույնությունը: Ծավալվել է ազգ-ազատագր. շարժում (տես *Իսրայել Օրի*, *Եսայի Հասան-Ջալալյան*, *Դավիթ Բեկ*, *Հովսեփ Էմին*): Ռուս–պարսկ. պատերազմների (1804–13, 1826–28) հետևանքով Արլ. Հ-ը միացվել է Ռուս. կայսրությանը: Երևանի և Նախիջևանի նախկին խանություններից, Օրդուբադի գվո-ից կազմվել է *Հայկական մարզը* (1828–40): *Արևմտյան Հայաստանը* (Օսմ. կայսրության կազմում) վարչականորեն բաժանվել է 7, *Կիլիկյան Հայաստանը*՝ 2 փաշայությունների: 1877–78-ի ռուս-թուրք. պատերազմով Հ-ի մի քանի շրջաններ միացվել են Ռուս. կայսրությանը. կազմվել է *Կարսի մարզը*: *Սան Ստեֆանոյի պայմանագրով* (1878) *Հայկական հարցը* մտել է միջազգ. դիվանագիտ-յան ասպարեզ: ԱՀՊ-ի Կովկաս. ռազմաճակատի գործողությունները հիմնականում ընթացել են Հ-ի տարածքում: Ծավալվել է *հայկական կամավորական շարժում*՝ Արմ. Հ-ի ազատագրման ակնկալիքով: *Եղիպտոլոգները* օգտագործելով պատերազմ. իրադրությունը՝ իրագործել են (1915) նախապես ծրագրված *Հայոց ցեղասպանությունը*:

2. Հ-ի մի փոքր տարածքում 1918-ին վերականգնվել է հայոց պետականությունը, որը շարունակվել է իր տարբեր դրսևորումներով՝ *Հայաստանի Հանրապետություն (1918–20)*, *Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն*, 1991-ից՝ *Հայաստանի Հանրապետություն*:

«ՀԱՅԱՍՏԱՆ», ազգ., քաղ., բանասիր. և առևտր. շաբաթաթերթ (1846–52, Կ. Պոլիս): Կ. Պոլսի հայոց պատրիարքության պաշտոնաթերթ: Խմբ-ներ՝ Հովհաննես Չամուճյան, Մկրտիչ Աղաթոն: Արևմտահայ անդրանիկ պաշտոն. պարբ-ը:

«ՀԱՅԱՍՏԱՆ», ազգ., հաս., գր. կիսամսյա թերթ (1888–92, Լոնդոն՝ հայ., ֆրանս.): Խմբագրապետ՝ Միհրան Սվազլյան:

«ՀԱՅԱՍՏԱՆ», ազգ., հաս., գր. օրաթերթ (1917–18, Թիֆլիս): Խմբ.՝ Վահան Թոթովենց: Նախաձեռնել է զորավար Անդրանիկը՝ Հովհաննես Թումանյանի աջակցությամբ:

«ՀԱՅԱՍՏԱՆ», հաս–քաղ. շաբաթաթերթ (1920-ից, Երևան, 1920–21-ին՝ Կոմունիստ», 1921–40 և 1989–90-ին՝ «Խորհրդային Հայաստան», 1940–89-ին՝ «Սովետական Հայաստան»): Մինչև 1990-ը՝ ՀԿԿ ԿԿ և ՀԽՍՀ ԳԽ ՆԽ պաշտոնաթերթ: Խմբ-ներ՝ Աշոտ Հովհաննիսյան, Եղիա Չուբար, Արտաշես Կարինյան, Աբանազ Մոռավյան, Թադևոս Մանդալյան, Դրաստամատ Տեր-Սիմոնյան, Վահան Երեմյան, Հմայակ Հովհաննիսյան, Ընձակ Վահանյան, Զարմայր Աշրաֆյան, Ադո Ադոյան, Հովհաննես Պողոսյան, Հովհաննես Մամիկոնյան, Հրաչյա Մարգարյան, Ղևոնդ Դալլաքյան, Հովհաննես Բաղդասարյան, Կարապետ Վարդանյան, Խաչիկ Հովակիմյան, Լորիս Կրոյան, Բակունց Անանիկյան, Էմանվել Արաքսման-Մանուկյան, Շչորս Դավթյան, Հենրիկ Աբրահամյան, Տիգրան Նիկողոսյան (1999-ից): ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան (1947), ՀՀ Աժ պատվոգիր (2005):

«ՀԱՅԱՍՏԱՆ», բազմաճյուղ հրտչ-յուն: Հիմնադրվել է 1921-ին Երևանում, մինչև 1964-ը՝ *Հայպետհրատ*: Հրատարակում է հաս–քաղ., պատմագիտ., գիտահանրամատչելի, գեղ., արվեստագիտ. գրկ.,

նաև տեղեկատուներ, բառարաններ, օրացույցներ ևն: Տնօրեններ՝ Միսաք Էփրիկյան, Էդվարդ Չոփուրյան, Լևոն Օհանյան, Հայկ Գասպարյան, Հայկ Դոնոյան, Եվգենյա Մելիքովա, Հարություն Մկրտչյան, Աշիկ Ղազարյան, Տիգրան Ալեքսանյան, Խնկանոս Դանիելյան, Բախշի Ներսիսյան, Գրիգոր Բալասանյան, Կարո Վարդանյան, Խիկար Բարսեղյան, Մխիթար Դավթյան, Վահագն Մկրտչյան, Վիկտոր Բալայան, Հրանտ Ղազարյան, Դավիթ Սարգսյան, Վահագն Սարգսյան (1998–ից):

«ՀԱՅԱՍՏԱՆ», ՀԱՀԳԲ պաշտոնաթերթ (1980–87 և 1991–97, համարների մեծ մասը հրատարակվել է Բեյրութում՝ հայ., անգլ., արաբ., ֆրանս., իտալ., ռուս., թուրք., իսպ., 1991–ից՝ միայն հայ.):

«ՀԱՅԱՍՏԱՆ», համապարփակ հանրագիտարան (2012, «Հայկական հանրագիտարան. հրատարակչություն»): Ներկայացնում է հայոց պատմությունը, աշխարհագրությունը, երկրի տնտ-յունը, գիտ-յունը, կրթությունը, մշակույթը, հայոց հոգևոր կյանքն ու եկեղեցին: Առանձին բաժնով ներկայացված է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը»՝ իր ձեռքբերումներով ու արդի խնդիրներով: Գլխ. խմբ.՝ Հովհաննես Այվազյան:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ, բարեսիր. կազմ-յուն: Հիմնադրվել է 1992–ին Երևանում: Ղեկ. մարմինը հոգաբարձուների խորհուրդն է՝ ՀՀ նախագահի գլխավորությամբ: Նպատակը համայն հայության ներուժի համախմբմամբ հայրենիքի զորացմանն ու բարգավաճմանն աջակցելն է: Ունի ավելի քան 25 մասնաճյուղ Սփյուռքում (շուրջ 20 երկիր), միջոցները գոյանում են կամավոր նվիրատվություններից, ձեռն-ների ու կազմ-յունների հատկացումներից, տարբեր միջոցառումներից (հեռուստա- և հեռախոսամարաթոններ, տոնավաճառներ, ցուցահանդեսներ ևն): ՀՀ–ում և Արցախում իրականացրել է ճանապարհների ջրազտման և ջրամատակարարման համակարգերի, բնական գազատարների կառուցման, դպրոցների, մանկապարտեզների, առողջապ., մարզ. և մշակութ. հաստատությունների վերակառուցման, գղտ-յան զարգացման, կրթ., գիտ., մշակութ. և այլ ծրագրեր (ավելի քան 250 մլն դոլար ընդհ. արժողությամբ):

«ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ», կրոնաբարոյական, գր-գեղ., պատմ. պարբերաթերթ (1939–61, Նյու Յորք): Ամերիկայի հայոց առաջնորդարանի պաշտոնաթերթը:

«ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՃԱԿԱՏ», հաս-քաղ., գիտամշակութ. շաբաթաթերթ (1946–50, Բուխարեստ): Բուխարեստի «Հայաստանյան ճակատ» կազմ-յան կենտր. կոմիտեի պաշտոնաթերթը: Տնօրեն-խմբ.՝ Հարություն Պապյան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԳԱՂՏՆԻ ԲԱՆԱԿ (ՀԱՀԳԲ, անգլ.՝ Armenian Secret Army for the Liberation of Armenia, ASALA), ընդհատակյա ռազմաքաղ. կազմ-յուն: Ստեղծվել է 1975–ին: Նպատակն ահաբեկչ. գործողություններով համաշխ. հաս-յան ուշադրությունը *Հայկական հարցի* վրա հրավիրելն էր՝ ստիպելու համար Թուրքիային ճանաչել 1915–23-ի Հայոց ցեղասպանությունը և բռնագրավված Արմ. Հայաստանը վերադարձնել նրա իսկական տիրոջը: ՀԱՀԳԲ-ի գործողությունները գլխավորապես ուղղված էին թուրք դիվանագետների, պետ. պաշտոնատար անձանց, դեսպանատների, հյուպատոսարանների, «Թուրքական օդային գծեր» ընկ-յան գրասենյակների, նաև օտարերկրյա բոլոր այն հաստատությունների դեմ, որոնք դրամ. կամ ռազմ. օժանդակություն են ցուցաբերել Թուրքիային:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ագրոպարեն. բնագավառի մասնագետներ պատրաստող բուհ ՀՀ–ում: Ստեղծվել է 1994–ին՝ Հայկ. գղտ. (1930) և Երևանի անասնաբուծ–անասնաբուժ. (1931) ինստ-ների միավորմամբ: 1994–2005–ին՝ ՀԳԱ, 2005–12–ին՝ Հայաստանի պետ. ագրար. համալսարան: 2012–ից՝ հիմնադրամ: Ունի 7 ֆակ., մասնաճյուղեր՝ Վանաձորում և Շուշիում: 2015–ին ուներ ավելի քան 12 հզ. ուսանող: Ունի հարուստ գրադարան, կենդանաբան. թանգարան:

Ռեկտորներ՝ Հայկ. գղտ. ինստ.՝ Սարգիս Աբովյան, Աստղիկ Հարությունյան, Խաչիկ Միրիմանյան, Բալաբեկ Մարտիրոսյան, Հայկազ Մարջանյան, Աշոտ Թովմասյան, Միքայել Գյուլխասյան, Երևանի անասնաբուծ–անասնաբուժ. ինստ.՝ Բորիս Մասինոն, Հայկ Մեղավորյան, Մարտին Մարտիրոսյան, Գուրգեն Շաքարյան, Գուրգեն Քամալյան, Հովհաննես Մադոյան, Գերասիմ Փանոսյան, Միհեր Մելքոնյան (ՀԳԱ), Արմեն Խաչատրյան, Արշալույս Թարվերդյան (1998–ից):

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ (ՀԱԱ), ստեղծվել է 1923–ին (բացվել է 1924–ին): 1935–ին Պետ. կենտր. արխիվի հիմքի վրա ստեղծվել են Հոկտ. հեղ–յան և Պատմության, 1936–ին՝ Կուս–յան կենտր. (1991–ից՝ ՀՀ հաս–քաղ. կազմ–յունների փաստաթղթերի կենտր. պետ. արխիվ), 1943–ին՝ Կինեմատոգրաֆիայի փաստաթղթերի պետ. կենտր. արխիվները: Ստեղծվել են նաև հայ պարբ. մամուլի (հետագայում՝ արվ–ի և գրկ–յան), գիտատեխ. փաստաթղթերի կենտր. պետ., Երևանի քաղաք. արխիվները: 1991–ից հետո ՀՀ Կառ–յանն առընթեր արխիվ. գործի վարչությունը վերակազմավորվել է ՀՀ ՄՆ արխիվ. գործի գործակալության, 2003–ից՝ ՀԱԱ: ՀԱԱ ենթակայությամբ գործում են 11 մարզ. մասնաճյուղեր, 29 տարածք. ներկայացուցչություններ:

ՀԱԱ–ում են պահվում Հայ եկեղեցու պատմության, Հայոց ցեղասպանության և Հայկ. հարցի, հայ ազգ–ազատագր. շարժումների, կամավոր. ջոկատների, հերոսամարտերի վերաբերյալ փաստաթղթեր, Հայաստանի առաջին հանրապետության մասին վավերագրեր, ՀԽՍՀ վերաբերյալ մնծածավալ փաստաթղթեր, հայ անվանի գործիչների անձն. արխիվներ, հայ գաղթավայրերի պատմությունը լուսաբանող նյութեր: 1960–ից լույս է ընծայում «*Բանբեր Հայաստանի արխիվների*» հանդեսը: Տնօրեններ՝ Խաչիկ Սամվելյան, Լևոն Յաղուբյան, Սուրեն Մարկոսյան, Կարապետ Ստեփանյան, Վարդգես Կզարթմյան, Աշոտ Հարությունյան, Պավել Սաֆյան, Հարություն Ֆելեքյան, Ամատունի Վիրաբյան (2003–ից):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱԳ), հայ տպագիր գրքի ամենախոշոր պահոցն աշխարհում: Կազմավորվել է Երևանի գավառ. ուսումնարանի (1832), հետագայում՝ արական գիմնազիայի (1881) գրադարանների 18 հզ. միավոր գրքային ֆոնդի հիման վրա: Առաջին գրացուցակները կազմել է Խաչատուր *Աբովյանը*՝ ուսումնարանի տեսչության տարիներին (1843–48): 1919–ին ստացել է պետ. գլխ. գրադարանի կարգավիճակ: Մինչև 1922–ը՝ Հայաստանի հանր., մինչև 1925–ը՝ ՀԽՍՀ պետ., մինչև 1990–ը՝ Ալեքսանդր Միասնիկյանի անվ. հանրապետ. գրադարան: Ներկայում ունի 6,8 մլն միավոր գրկ.՝ հայ. և շուրջ 70 այլ լեզուներով: ՀԱԳ հանրապետության էլեկտրոն. համահավաք գրացուցակի ստեղծման և գրկ–յան թվայնացման կենտրոնն է: Զբաղվում է նաև գրահրտչ. գործունեությամբ, տպագրում է գրադարան. գործին, հայ գրքի պատմությանը, գրադարանագիտ–յան հարցերին նվիրված մեթոդ. նյութեր ու մատենագիտ. գրկ., 2004–15-ին լույս է ընծայել «*Հոգևոր հայրենիք*» ամսաթերթը, 1989-ին սահմանել է «Հակոբ Մեղապարտ» հուշամեդալը: Տնօրեններ՝ Ստեփան Կանայան, Երվանդ Թաղիանոսյան, Սամիկոն Գրիգորյան, Սուրեն Մարկոսյան, Ազատ Մարտիկյան, Թեմզա Զաքարյան, Աղավնի Ստեփանյան, Արմենակ Միրզոյան, Արազի Թիրաբյան, Հենրիկ Լիլոյան, Ռաֆայել Իշխանյան, Գևորգ Տեր–Վարդանյան, Դավիթ Սարգսյան, Տիգրան Զարգարյան (2011–ից):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՊԱԼԱՏ, ՀՀ–ում հրտ–յունների պետ. գրանցման, հաշվառման և ազգ. անձեռնմխելի ֆոնդերի պահպանության, ազգ. մատենագիտ–յան, գրքագիտ–յան, կենտրոնացված քարտեզագրացուցակավորման, մամուլի վիճակագրության և տեղեկատվության, ճյուղային սոցիոլոգ. հետազոտությունների ազգ. կենտրոն: Հիմնադրվել է 1922–ին Երևանում: Մինչև 1995–ը՝ ՀՀ պետ. գրապալատ: Տպագրում է նաև մատենագիտ. գրկ., 1925–ից լույս է ընծայում «*Հայ տպագրության տարեգիրք*» պարբ–ը: Տնօրեններ՝ Հովհաննես Պետրոսյան, Գարսևան Հակոբյան, Վիտալի Ալանյան, Մկրտիչ (Մգրո) Սարգսյան, Հովհաննես Բեքմեզյան: 2016–ից՝ ՀԱԳ–ի կազմում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ, ՀՀ բարձրագույն պետ. կոչում: Սահմանվել է 1994–ի մարտի 29–ին, վերասահմանվել՝ 2014–ի հունիսի 21–ին: Շնորհվում է երկրի պաշտպ–յան, իրավակարգի ամրապնդման բնագավառներում, ինչպես նաև ազգ. նշանակալի արժեքների ստեղծման գործում ՀՀ–ին մատուցած համազգ. նշանակության բացառիկ ծառայությունների համար: Կոչումը շնորհում է ՀՀ նախագահը: Հ. Ա. ի–ի կոչմանն արժանացած անձանց հանձնվում է «Հայրենիքի շքանշան»: Կոչումը շնորհվել է 15 անձի (9–ը՝ հետմահու). 14–ն ազգությամբ հայ են, 1–ը՝ ռուս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ պետական, հիմնադրվել է 1921–ին Երևանում՝ որպես Հայաստանի պետ. թանգարանի արվ–ի բաժին (վարիչ՝ Մարտիրոս *Սարյան*), 1935–ից՝ Կերպարվ–ի պետ. թանգարան, 1947–ից՝ Հայաստանի պետ. պատկերասրահ, 1991–ից՝ Հայաստանի ազգ. պատկերասրահ: Ունի 52 ցուցասրահ, հայկ., ռուս., նաև XV–XIX դդ–ի եվրոպ. և ամերիկ. արվ–նեի ստեղծագործությունների, հուն., չին., պարսկ. դեկորատիվ–կիրառ. արվ–ների հավաքածու: Տնօրեններ՝ Ռ. Դրամբյան, Վ. Հարությունյան, Ռ. Պարսամյան, Ա. Չիլինգարյան, Է. Իսաբեկյան, Ա. Տեր–

Գաբրիելյան, Շ. Խաչատրյան, Փ. Միրզոյան, Արման Ծատուրյան (2015–ից):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ստեղծվել է 1933–ին՝ Շին. (1930) և Քիմիատեխնոլոգ. (1933) ինստ–ների միավորմամբ: Մինչև 1991–ը՝ Երևանի պոլիտեխ. ինստ., մինչև 2015–ը՝ Հայաստանի պետ. ճարտարագիտ. համալսարան: Ունի 12 ֆակ., մասնաճյուղեր՝ Գյումրիում, Վանաձորում, Կապանում: 2015–ին ուներ շուրջ 10 հզ. ուսանող: Ռեկտորներ՝ Միքայել Մազմանյան, Հակոբ Հովհաննիսյան, Հովհաննես Բաբաջանյան, Հմայակ Ղոնդախչյան, Աշոտ Մելիքջանյան, Միսակ Պետրոսյան, Պետրոս Մելքոնյան, Աշոտ Ասլանյան, Արծրունի Գասպարյան, Ռաֆայել Մովսիսյան, Յուրի Սարգսյան, Արա Ավետիսյան, Հովհաննես Թոքմաջյան, Ռաստանիկ Մարուխյան (2006–11, 2015–ից):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԴԻՈՅԻ ԷՍՏՐԱԴԱՅԻՆ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ, հիմնադրվել է 1972–ին Երևանում՝ Հեռուստառադիոյի էստրադ. նվագախմբի (1967–72, հիմադիր և գեղ. ղեկ.՝ Մարտին *Վարդազարյան*) հիման վրա: Գեղ. ղեկ–ներ՝ Մ. Սավիսակալյան (1972–86), Ե. Երզնկյան (1986–ից), դիրիժոր և դաշնակահար՝ Մ. Վարդազարյան (1989–ից): Նվագացանկում՝ Ա. Այվազյանի, Ա. Բաբաջանյանի, Ա. Աճեմյանի, Է. Բաղդասարյանի, Ա. Հեքիմյանի, Կ. Օրբելյանի, Ռ. Ամիրխանյանի, Ս. Շաքարյանի և ուր. երկերից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԴԻՈՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԱՆՍԱՄԲԼ Արամ Մերանգուլյանի անվան (1967–ից), վաստ. կոլեկտիվ (1956–ից): Հիմնադրվել է 1926–ին Երևանում՝ որպես ռադիոյի ժողգործիքների նվագախումբ, 1957–ից՝ Հեռուստառադիոյի ժողգործիքների անսամբլ: Գեղ. ղեկ–ներ՝ Ա. Մերանգուլյան, Ս. Ջրբաշյան, Ա. Մանդակունյան, Մ. Բեգլարյան, Ռ. Սաթևոսյան (1996–ից), դիրիժորներ՝ Մ. Բեգլարյան, Ա. Պետրոսյան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԴԻՈՅԻ ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ, հիմնադրվել է 1979–ին Երևանում՝ որպես Հեռուստատեսության և ռադիոյի կամեր. երգչախումբ: Գեղ. ղեկ–ներ՝ Է. Հովհաննիսյան, Տ. Հեքեքյան (1984–ից, նաև գլխ. դիրիժոր), խմբավար՝ Հ. Թոփիկյան: Մի շարք միջազգ. մրցույթների մրց–ներ: Գործել է մինչև 2001–ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԴԻՈՅԻ ՋՈՒԹԱԿԱՀԱՐՆԵՐԻ ԱՆՍԱՄԲԼ Գևորգ Աճեմյանի անվան (1998–ից), հիմնադրվել է 1970–ին Երևանում՝ Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտ. դպրոցի ջութակահարների անսամբլի (1958, հիմնադիր և գեղ. ղեկ.՝ Գևորգ *Աճեմյան*) հիման վրա՝ որպես հեռուստատեսության և ռադիոյի ջութակահարների անսամբլ (1997–ից՝ Հ. ա. ռ. ջ. ա., 2010–ից՝ Ջութակահարների անսամբլ): Գեղ. ղեկ–ներ՝ Անահիտ Աճեմյան, Աննա Աճեմյան (2010–ից): ՀԼԿԵՄ մրց. (1971):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԴԻՈՅԻ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ Օհան Դուրյանի անվան (1999–ից), հիմնադրվել է 1966–ին Երևանում: 1967–ից գործել է որպես Հեռուստատեսության և ռադիոյի սիմֆ. նվագախումբ: Գլխ. դիրիժոր՝ Յուրի *Դավթյան* (1966–68 և 1992–94–ին), հիմնադիր և գեղ. ղեկ.՝ Օ. Դուրյան (1967–74 և 1991–98–ին, ընդմիջումով), գլխ. դիրիժոր՝ Ռաֆայել *Մանգասարյան* (1969–90, 1974–ից՝ նաև գեղ. ղեկ.), Էմին *Խաչատրյան* (1986–91–ին, ընդմիջումով): Գործել է մինչև 2001–ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՀԱՀ), ստեղծվել է 1991–ին՝ ՀԲԸՄ–ի ու ԱՄՆ Կալիֆոռնիայի համալսարանի համատեղ ջանքերով և ՀՀ Կառ–յան աջակցությամբ՝ որպես Կալիֆոռնիայի համալսարանի մասնաճյուղ: ՀԱՀ–ն ամերիկյան մոդելի մագիստրոս., 2014–ից՝ նաև բակալավր., անկախ, մասնավոր համալսարան է: Ուսուցումը՝ անգլ–ով: Ռեկտորներ՝ Միհրան Աղբաբյան, Հարություն Արմենյան, Բրյուս Պողոսյան (2010–ից):

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՀԻ», հաս–քաղ., գր–գեղ. ամսագիր (1924–98, Երևան, 1941–58–ին ընդհատվել է): Մինչև 1990–ը՝ ՀԿԿ ԿԿ պաշտոն. հանդես: Խմբ–ներ՝ Ֆլորա Վարդանյան, Վարդուշ Տարախչյան, Լյուսի Թարգյուլ, Մարգո Չոլախյան, Վարսիկ Եղիազարյան, Աստղիկ Երիցյան, Ժենյա Սադոյան, Անժիկ Չիլինգարյան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է 1991–ին Երևանում: Նախագահը *Գարեգին Բ* Ամենայն հայոց կաթողիկոսն է: Հրատարակում է աստվածաշնչյան գրկ.:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», ամսագիր (1958–1996, Երևան, մինչև 1984–ը՝ «Հայաստանի արդյունաբերություն»): ՀՀ պետպլանի, պետշինի և ՀՃՄ պաշտոն. հրտ–յուն: Խմբ–ներ՝ Պետրոս Աթաբեկյան, Տոնիկ Կարապետյան, Յուրի Առաքելյան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ, ՀՀ պետանվտանգությունը պաշտպանող մարմին: Ստեղծվել է 1920–ին՝ հակահեղ. խռովությունների, դավադրությունների, սաբոտաժի, դիվերսիայի դեմ պայքարելու նպատակով: Մինչև 1921–ի մայիսը Հ. ա. հ. ենթարկվում էր Հայաստանի հեղկոմին, այնուհետև՝ ՀԽՍՀ ժողկոմխորհին և օժտված էր ժողկոմատներին հավասար իրավունքներով: 1926–ի սեպտ–ին Հ. ա. հ. լուծարվել է, փոխարենն ստեղծվել Պետ. քաղ. վարչություն՝ ՆԳ ժողկոմատի կազմում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ, ոչ առևտր. կազմ–յուն: Հայաստանի բանկերի ասոցիացիայի իրավահաջորդն է: Հիմնադրվել է 1995–ին: Միությանն անդամակցում են ՀՀ–ում գործող բոլոր 21 առևտր. բանկերը (2016): Նպատակը բանկերի շահերի պաշտպ–յունն է, միջբանկ. կապերի զարգացմանը նպաստելը, բանկ. և ֆինանսավարկ. գործունեության մասին օրենսդր. և նորմատիվ. այլ ակտերի նախագծերի մշակմանը մասնակցելը ևն:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ», գիտ. եռամսյա հանդես (1961–ից, Երևան, հոդվածները՝ հայ., ռուս., անգլ., մինչև 1995–ը՝ «Փորձաբարական և կլինիկական բժշկություն»): ՀՀ ԳԱԱ հրտ–յուն: Խմբ–ներ՝ Բարդուղիմեոս *Ֆանարջյան*, Իվան *Գևորգյան*, Ռաֆայել *Սփամբրյցյան*, Վիոլեն *Հակոբյան*, Յուրի *Ալեքսանյան* (1991–ից):

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱՀԽԱՐՀ», թեմատիկ հանրագիտարան (2006, «Հայկական հանրագիտարան. հրատարակչություն»): Ներկայացնում է Հայաստանի բնաշխարհի, ֆիզիկաաշխարհագր. պայմանների, երկրբ. կառուցվածքի, լեռն. համակարգի բաղադրիչների, օգտ. հանածոների, բուս. և կենդ. աշխարհների, էկոլոգիայի, բնօգտագործման ու բնապահպան. խնդիրների ընդհ. պատկերը: Գլխ. խմբ.՝ Հովհաննես Այվազյան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ, հիմնադրվել է 1952–ին (մինչև 1960–ը՝ Հանրապետ. բնագիտ. թանգարան) Երևանում: Թանգարանում պահվում են Հայաստանի կենդ. և բուս. աշխարհների յուրահատուկ նմուշներ (ցուցադրվում են շուրջ 2500–ը): 4 սրահներից մեկը նվիրված է իրանահայ բարերար Լ. Ահարոնյանին (2002–04–ին վերանորոգել է թանգարանի շենքը, նվիրել Իրանի կենդ. աշխարհի բազմաթիվ նմուշներ): Մասնաճյուղեր ունի Գյումրիում և Արարատի մարզի Ղուկասավան գ–ում:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆՈՒԹՅՈՒՆ», գիտահանրամատչելի եռամսյա հանդես (1961–2000, Երևան): Բնության պահպանության հայկ. ընկ–յան կենտր. խորհրդի նախագահության հրտ–յուն: Խմբ–ներ՝ Խաչատուր Միրիմանյան, Լևոն Հարությունյան, Անդրանիկ Բարսեղյան:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՔԵՐԸ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՎԱՃԱՌՔՈՒՄ», եռամսյա հանդես (2004–15, Երևան): Հիմնադիր–խմբ.՝ Վահան *Խաչատրյան*:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՒՄԱՆԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻ ԱՆՍԱՄԲԼ պետական, հիմնադրվել է 1983–ին Երևանում (հիմնադիր և գեղ. ղեկ.՝ Ռուբեն *Այթոնյան*, 1989–93–ին, 2000–ից՝ գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր Գևորգ *Մանասյան*): Կազմում՝ 11 երաժիշտ, 14 երգիչ–երգչուհի, 6 պարողպարուհի: Երկացանկում՝ Սայաթ–Նովայի, Շերամի, Ջիվանու, Հավասու, Շիրինի, Գ. Մանասյանի, նաև Հայաստանի ազգագր. տարբեր շրջանների երգերի մշակումներ, ազգ. ծեսերի բեմադրություններ («Թագավորագովք», «Նավասարդ») ևն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է Երևանում 1987–ին՝ Հայաստանի երգչախմբային ընկ–յան (հիմն.՝ 1958) հիման վրա: Նախագահության կազմում՝ Թ. Ալթունյան (1958–74–ին՝ նախագահ), Մ. Մազմանյան (1958–74–ին՝ փոխնախագահ), Ա. Տեր–Հովհաննիսյան, Կ. Զաքարյան, Ե. Սահառունի, Է. Կզարթմյան, Ռ. Աթայան, Է. Ծատուրյան (1973–96–ին՝ նախագահ), Հ. Չեքիջյան, Դ. Ղազարյան (1996–ից՝ նախագահ) և ուր.: Նպաստել է երգչախմբերի հիմնադրմանն ու կատարելագործմանը, խմբերգ. գրության բազմացմանը, կազմակերպել սեմինարներ, երգի տոներ, մրցույթներ ևն: Ընկ–յանը կից գործել են մանկ. երգչախումբ–ստուդիաներ, 1977–ից՝ Խմբերգ. արվ–ի տունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԳԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ, հիմնադրվել է 1994–ին Երևանում (հիմնադիր–գեղ. ղեկ.՝ Արթուր *Գրիգորյան*): Թատրոնում ներկայացվում են փոփ երաժշտության համերգներ, մյուզիքլներ, համերգ–բեմադրություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ, հիմնադրվել է 2005–ին Երևանում (գեղ. ղեկ. ու գլխ. դիրիժոր՝ Սերգեյ *Սմբատյան*), 2007–ից՝ Ա. Խաչատրյանի անվ. միջազգ. մրցույթի պաշտոն. նվագախումբը, 2008–ից՝ պետ.: 2010–ից նվագախմբի նախաձեռնությամբ անցկացվում է հայ կոմպոզիտոր. արվ–ի փառատոն:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋՐՈՒՅԱՔԻՑ», հաս–քաղ., կրթամշակութ. շաբաթաթերթ (2007–13, Երևան՝ հայ., ռուս.): Խմբ–ներ՝ Արմեն Խանբաբյան, Աշոտ *Աղաբաբյան*, Գենոֆ–յա Մարտիրոսյան:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ («ՀԷՑ»), էլեկտրաէներգիայի բաշխմամբ և իրացմամբ զբաղվող ոչ պետ. ընկ. ՀՀ–ում: Ստեղծվել է 2002–ին՝ տարածաշրջ. էլեկտրաէներգիայի բաշխման և իրացման 4 պետ. ցանցերի («Երևանի էլեկտրական ցանցեր», «Հյուսիսային էլեկտրական ցանցեր», «Հարավային էլեկտրական ցանցեր» և «Կենտրոնական էլեկտրական ցանցեր») միավորման եղանակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՍՏՐԱԴԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ պետական, հիմնադրվել է 1938–ին Երևանում (մինչև 1948–ը՝ Հայաստանի ջազ–նվագախումբ): Հիմնադիրներ՝ Ա. Այվազյան (գեղ. ղեկ.), Յ. Վարդազարյան (դիրիժոր), Ա. Մարտիրոսյան (ռեժ.), դիրիժորներ՝ Մ. Թադևոսյան, Կ. Օրբելյան (1956–92–ին՝ գեղ. ղեկ.), Գ. Խաչատրյան, մենակատարներ՝ Լ. Լազարևա, Ա. Սամվելյան, Մ. Հովհաննիսյան, Կ. Տոնիկյան, Բ. Մավիսակալյան, Գ. Այվազյան, Ա. Մալխասյան և ուր.: Երկացանկում՝ հայկ. ժող., ջազ., դաս. և արդի կոմպոզիտորների երկեր: Գործել է մինչև 1992–ի վերջը: 1997–ին վերակազմավորվել է Հայաստանի ջազ–նվագախմբի (1997–2010–ին՝ գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր՝ Ա. Մարտիրոսյան, 2010–ից՝ Ա. Հյուսնունց):

Ազգ. երաժշտ. մրցանակաբաշխության «Լավագույն ֆյուժն–ալբոմ» (2001), Տարվա լավագույն ջազ նվագախումբ (2008) մրց–ներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ, ստեղծագործ. կազմ–յուն: Հիմնադրվել է 1987–ին Երևանում՝ Հայկ. թատեր. ընկ–յան (1940, Երևան, հիմնադիր՝ Գուրգեն *Զանիբեկյան*) հիման վրա: Միավորում է ՀՀ թատրոնի գործիչներին, ընդգրկում հանրապետ. թատրոնների և այլ ստեղծագործ. միությունների սկզբն. կազմ–յուններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԿԵՆՏՐՈՆ պետական, հիմնադրվել է 1978–ին՝ Հովհաննես *Շարամբեյանի* (2008–ից՝ նրա անվան) նախաձեռնությամբ՝ Երևանի ժող. ստեղծագործության տան (գործել է մինչև 1992–ը) մշտ. գործող ցուցահանդեսի հիման վրա (2011–ից ընդգրկված է ժող. ստեղծագործության կենտրոնում): Նպատակը հայկ. ժող. կերպարվ–ի և ղեկորատիվ–կիրառ. արվ–ի ավանդույթների պահպանումն է և զարգացումը: Հավաքածուն ընդգրկում է ավելի քան 12 հզ. նմուշ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ պետական, հիմնադրվել է 1977–ին Երևանում (հիմնադիր՝ Կ. Միրզոյան, 1977–80–ին՝ նաև գլխ. դիր., գեղ. ղեկ., 1981–86–ին՝ Վ. Բայան, 1987–ից՝ Հ. Մանգասարյան): Բանահայուս. երաժշտության միջազգ. փառատոների (Մեծ մրց., 1984, Վիսբադեն, 1992, Բարելոն) դափնեկիր: 1998–ին միավորվել է *Հայաստանի ժողովրդական երգի–պարի անսամբլի* հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻ–ՊԱՐԻ ԱՆՍԱՄԲԼ Թաթուլ Ալթունյանի անվան, Հայկական ժողովրդական երգի–պարի պետական վաստակավոր անսամբլ (1974–ից): Հիմնադրվել է 1938–ին (մինչև 1970–ը գեղ. ղեկ.՝ Թաթուլ *Ալթունյան*) Երևանում: Գործիք. խմբի ղեկ.՝ Ա. Ալեքսանդրյան, պարերի բեմադրիչ՝ Է. Սանուկյան, բալետմայստերներ՝ Ի. Արբատով, Զ. Մուրադյան և ուր., զգեստների ձևավորումը՝ Մ. Սարյանի, Խ. Եսայանի, Մ. Պետրոսյանի, Ռ. Էլիբեկյանի և ուր., գեղ. ղեկ–ներ՝ Է. Հովհաննիսյան, Խ. Ավետիսյան, Է. Ծատուրյան, Ռ. Ալթունյան, Մ. Մավիսակալյան, Հ. Մանգասարյան, Ժ. Ալթունյան (2004–ից): 1998–ին անսամբլի հետ միավորվել է *Հայաստանի ժողովրդական գործիքների նվագախումբը*:

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2011):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ, ստեղծագործ. ՀԿ: Հիմնադրվել է 1959–ին Երևանում: Միավորում է ՀՀ ՋԼՄ–ների և լրագրողների ՀԿ–ների ավելի քան 1560 ներկայացուցիչներ: Սահմանել է «Ոսկե գրիչ» (1969–ից) եռամյա և «Ազդարար» (2004–ից) ամենամյա մրց–ները: Լրագրողների միջազգ. դաշնության, Լրագրողների միությունների միջազգ. համաձայնության անդամ է: Նախագահներ՝ Կամո Վարդանյան, Խաչիկ Հովակիմյան, Արտավազդ Խաչիկյան, Էմանվել Արաքսման–Մանուկյան, Աստղիկ Գևորգյան (1992–ից):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՀԼԿԵՄ), հաս–քաղ. կազմ–յուն՝ Համ.ԿԵՄ–ին կից: Գործել է 1920–90–ին: Նպատակը երիտասարդությանը կոմ. ոգով դաստիարակելն էր և սոցիալիզմի կառուցմանը մասնակից դարձնելը: ՀԼԿԵՄ շարքեր ընդունվել են 14–28 տարեկան երիտասարդներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՒՂԵՐԻ ՄԻԱՎԱՐՈՒՄ, ստեղծվել է 1932–ին Երևանում: Նպատակը ՀՀ–ում ապրող խուլերին ու համրերին հաշվառելն է, նրանց միավորելը, հաս. աշխ–ի մեջ ներգրավելը, սոցիալ–կենցաղ. պայմանները բարելավելը: Մասնաճյուղեր ունի ՀՀ գրեթե բոլոր մարզերում, համագործակցում է միջազգ. և ՀՀ տարբեր կառույցների հետ, կազմակերպում է ժեստերի լեզվի ուսուցման, արհեստագործ. և այլ դասընթացներ, իրականացնում է սոցիալ. ծրագրեր, մշակութ., կրթ., մարզ. միջոցառումներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՄԵՐԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ պետական, հիմնադրվել է 1962–ին Երևանում՝ որպես անսամբլ: Հիմնադիր և գեղ. ղեկ.՝ Զարեհ *Սահակյանց* (1962–75): 1975–83–ին գեղ. ղեկ.՝ Կ. Բաղդասարյան, 1983–97–ին՝ Ռ. Ահարոնյան: Նվագացանկում՝ բարոկկոյի վարպետների, եվրոպացի և հայ կոմպոզիտորների երկեր, հայկ. ժող. երգերի ու միջնադար. մեղեդիների մշակումներ: 1997–ին միավորվել է Երևանի կամեր. նվագախմբի հետ (1997–2010–ին, գեղ. ղեկ. և դիրիժոր՝ Արամ *Ղարաբեկյան*, 2010–ից՝ Վահան *Մարտիրոսյան*):

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ», գիտ. եռամյա հանդես (1966–ից, Երևան, հոդվածները՝ հայ., ռուս., անգլ.): ՀՀ ԳԱԱ հրտ–յուն: Խմբ–ներ՝ Հրանտ Բատիկյան, Էվրիկ Աֆրիկյան, Էմիլ Գևորգյան (2008–ից):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԱՃԽԱՏՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, Հայաստանի նկարիչների, քանդ–ների և ճարտ–ների առաջին ընկ–ներից: Հիմնադրվել է Երևանում, գործել 1923–32–ին: Կազմակերպել է ցուցահանդեսներ, հրատարակել կատալոգներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀԿԿ), ՀԽՍՀ քաղ. կազմ–յուն: Կազմավորվել է 1920–ի գարնանը: 1920–ի նոյեմբ–ից 1990–ի օգոստ. եղել է ՀԽՍՀ–ում ղեկավարող կուս–յուն, ԽՄԿԿ բաղկացուցիչ մասը: Այդ տարիներին զգալիորեն աճել է ժող. տնտ–յունը, ստեղծվել են ծանր ու թեթև արդ–յան բազմաթիվ ճյուղ–ներ, երկրում գործել է անվճար կրթության, առողջապ–յան և բնակարան. ապահովման համակարգ: 1990–ի սեպտ–նոյեմբ–ին ՀԿԿ–ն XXIX համագումարի որոշմամբ՝ ՀԿԿ դուրս է եկել ԽՄԿԿ կազմից և, որպես ինքնակառավարվող կուս–յուն, պաշտոնապես գրանցվել է 1991–ի հուլիսին (հիմնադիր քարտուղար՝ Սերգեյ Բադալյան, քարտուղար՝ Տաճատ Սարգսյան՝ 2013–ից): Հրատարակել է «Հայաստանի կոմունիստ» պաշտոնաթերթը (1992–96): ՀՀ–ում գործում է նաև Հայաստանի միավորված կոմկուսը (հիմն.՝ 2003, Յուրի Սանուկյան) և Հայաստանի առաջադիմ. միացյալ կոմկուս (հիմնադիր՝ Վազգեն Սաֆարյան):

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ», քաղ., տնտ., գր–գեղ., կրոնաբարոյական պարբերաթերթ (1900–68, Բոստոն, ապա՝ Նյու Յորք, 1900–19–ին՝ «Կոչնակ Հայաստանի»): Խմբ–ներ՝ Վահան Քյուրքջյան, Հովհաննես Սանդիկյան, Խաչատուր Պեննեյան, Հովհաննես Ավագյան, Հայկակ Խազոյան, Վահե–Հայկ, Անդրանիկ Պետիկյան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԿԵՄԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է 2010–ին Երևանում (հիմնադիր–տնօրեն՝ Սոս *Պետրոսյան*): Զբաղվում է հայկ. կրկեսի զարգացման խնդիրներով, կազմակերպում է հյուրախաղեր, հանդիպումներ, դասախոսություններ, վարպետության դասեր և այլ միջոցառումներ: Ունի մասնաճյուղ Ֆրանկֆուրտում (2011–ից, գեղ. ղեկ.՝ Սոս Պետրոսյան Կրտսեր):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅԲԵՐԻ ՄԻԱՎԱՐՈՒՄ ՀԿ, ստեղծվել է 1930–ին Երևանում: Նպատակը ՀՀ–ում ապրող տեսողությունից հաշմանդամների (I և II խմբեր, շուրջ 1900) շահերն ու իրավունքները պաշտպանելն է, հաս–յան մեջ նրանց ներգրավելուն նպաստելը, սոց. խնդիրների լուծմանն աջակցելը: Ունի մասնաճյուղեր ՀՀ մարզերում, արտադր. գործունեությամբ զբաղվող ՍՊԸ–ներ, հրատարակչություն և տպարան (տես *Կույրերի միավորման հրատարակչություն*), երգչախումբ, ժողգործիքների նվագախումբ ևն: Մասնակցում է միջազգ. տարատեսակ փառատոների և մրցաշարերի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ՀՀՀ՝ «Հ1» տարբերանշանով), 1–ին հաղորդումը հեռարձակել է 1956–ի նոյեմբ. 29–ին: 1957–ին հիմնադրվել է ՀՀ ՆԽ–ին առընթեր ռադիոհաղորդումների և հեռուստատեսության պետ. կոմիտեն: 1973–ի մայիսին հեռարձակել է գունավոր պատկերմամբ 1–ին հաղորդումը: 1999–ի փետր–ից հաղորդումները սփռում է արբանյակ. կապով: ՀՀՀ ղեկ. մարմինը Հանր. հեռուստառադիոընկ–յան խորհուրդն է: 2015–ից վերգետնյա հաղորդումներն իրականացվում են թվային եղանակով: Ունի տեղեկատվ., հաս–քաղ., տնտ., երիտասարդ., մանկապատանեկան, երաժշտ., մարզ., արտերկրի համար և այլ

ծրագրեր, գործում են առևտրագովազդ. գործակալությունը, հեռուստատես. կինոնկարների «Երևան» ստուդիան ևն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈ (ՀՀՌ), 1-ին փորձն. ռադիոհաղորդումը հեռարձակվել է 1926-ի սեպտ. 1-ին: 1929-ին հիմնադրվել է հանրապետ. ռադիոկոմիտեն: 1947–2002-ին գործել է Արտասահմանի հայության համար հաղորդումների խմբագրությունը (1957-ին ստեղծվել է արտասահմանի համար հեռարձակվող հաղորդումների վարչությունը): 1977-ին գործարկվել են «Օրբիտա–2» տիեզ. կապի կայանը և հեռուստատես. նոր աշտարակը: ՀՀՌ-ի ղեկ. մարմինը Հանր. հեռուստառադիոընկ-յան խորհուրդն է: Ներկայում ՀՀՌ-ն իրականացնում է 14 լեզվով, օրական 50 *ժ* տևողությամբ հաղորդումներ՝ համաշխ. սփոռումով: Ունի նաև միջազգ. համացանց. էջ՝ 8 լեզվով: ՀՀՌ-ի կառույցում գործում են մի շարք ստեղծագործ. խմբեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀՀԿ), ՀՀ քաղ. կազմ-յուն: Հիմնադրվել է 1990-ի ապրիլին (գրանցվել է 1991-ի մայիսի 14-ին) Երևանում: Հիմնադիր-նախագահ՝ Աշոտ Նավասարդյան: ՀՀԿ գաղափարախոսության հիմքում Գարեգին *Նժդեհի* և նրա գաղափարակիցների՝ ազգի ու հայրենիքի հավիտենականության գաղափարի վրա խարսխված ուսմունքն է: 1991-ից հրատարակում է *«Հանրապետական»* պաշտոնաթերթը, 1996-ից՝ *«Ազգայնական մատենաշարը»*: 1990–95-ին ՀՀ ԳԽ-ում ՀՀԿ ներկայացված էր 1, 1995–99-ին ՀՀ ԱԺ-ում՝ 5, 1999–2003-ին՝ 36, 2003–07-ին՝ 40, 2007–12-ին՝ 64 պատգմ-ով: 2012–17-ին՝ 70 պատգմ. (53-ը՝ ՀՀԿ անդամ): 2008-ի փետր-ին ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանն ընտրվել է ՀՀ նախագահ, իսկ 2013-ի փետր. 18-ին վերընտրվել է այդ պաշտոնում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՀՀ), **Հայաստան**, պետություն Այսրկովկասում: Սահմանակից է Վրաստանին, Ադրբեջանին, ԼՂՀ-ին, Իրանին և Թուրքիային: Տարածքը՝ 29,7 հզ. *կմ²*, բն.՝ 2,97 մլն (2016): Մայրաքաղաքը՝ *Երևան*: Պետ. լեզուն՝ հայ.: Կառավարման ձևը՝ խորհրդարան.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը (ԱԺ): Հավատացյալների մեծ մասը ՀԱԵ հետևորդ է: Բաժանված է 10 վարչ. մարզերի: Անդամակցում է ՄԱԿ-ին, ԵԱՀԿ-ին, ԵԽ-ին, ԵԱՏՄ-ին, ԱՊՀ-ին, ՀԱՊԿ-ին ևն: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով շուրջ 5,9 հզ. ԱՄՆ դոլար է (2010): Արտահանում է պղնձի խտանյութ, մոլիբդեն, մրգեր, կոնյակ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, վառելանյութ, քիմիկատներ, դեղեր, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ հայկ. դրամ:

1918-ի մայիսի 28-ին Արլ. Հայաստանի մի մասում ստեղծվել է Հայաստանի առաջին հանրապետությունը (տես *Հայաստանի Հանրապետություն 1918–20*): 1920-ի դեկտ. 2-ին ստորագրված ռուս-հայկ. համաձայնագրով Հայաստանը հայտարարվել է անկախ սոց. խորհրդ. հանրապետություն (տես *Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն*): 1921-ի մարտի 16-ի Մոսկվայի խորհրդա-թուրք. պայմանագրով Կարսի մարզը և Սուրմալուի գվո-ը հանձնվել են Թուրքիային, Նախիջևանը՝ Ադրբեջանին: 1921-ի հուլիսի 5-ին ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի որոշմամբ Լեռն. Ղարաբաղը միացվել է Ադրբ. ՍԽՀ-ին: 1923-ի հուլիսի 7-ին կազմավորվել է ԼՂԻՄ-ը: 1922-ին ՀԽՍՀ-ն Անդրկեղերացիայի կազմում ներառվել է նորաստեղծ (դեկտ. 30) ԽՍՀՄ-ի կազմում: Մարդկային և նյութ. ողջ պաշարներով մասնակցել է ՀՄՊ-ին:

1988-ի փետր-ին սկսվել է Արցախյան շարժումը՝ ԼՂԻՄ-ը Ադրբ. ԽՍՀ-ի կազմից դուրս բերելու և ԽՍՀ-ին վերամիավորելու համար, որին ի պատասխան՝ Ադրբեջանն իրականացրել է հայ ազգաբնակչության ջարդեր Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում և այլուր: Սկսվել է Արցախյան ազատագր. պատերազմը (1991–94). 1991-ի սեպտ. 2-ին հռչակվել է Լեռն. Ղարաբաղի անկախությունը, կազմավորվել է ԼՂՀ-ն: 1991-ի սեպտ. 21-ի անկախության հանրաքվեի արդյունքներով ՀՀ խորհրդարանը սեպտ. 23-ին ՀՀ հռչակել է ինքնիշխան պետություն: 1992-ի մարտի 2-ից ՀՀ ՄԱԿ-ի անդամ է: 1995-ի ՀՀ Սահմանադրությամբ իրավ. ձևակերպում է տրվել քաղ. նոր համակարգին, հռչակվել է սեփականության բոլոր ձևերի հավասարություն ևն: 2005-ին փոփոխվել է Սահմանադրությունը, 2015-ին ընդունվել նորը, որով փոխվել է պետության կառավարման ձևը՝ կիսանախագահականից անցում է նախատեսվում խորհրդարանականի: ՀՀ նախագահներ՝ Լևոն *Տեր-Պետրոսյան* (1991–98), Ռոբերտ *Քոչարյան* (1998–2008), Սերժ *Սարգսյան* (2008–ից):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 1918–20, պետություն: Հռչակվել է 1918-ի մայիսի 28-ին: Տարածքը՝ 11 հզ. *կմ²* (1918, 58 հզ. *կմ²*, 1919), բն.՝ 961,7 հզ.: Մայրաքաղաքը՝ Երևան: Գոյատևել է մինչև 1920-ի դեկտ. 2-ը, երբ հռչակվել է ՀԽՍՀ-ն: Անգնահատելի դեր է խաղացել հայոց պետականության վերահաստատման գործում:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», հաս-քաղ., սոցիալ-տնտ., կրթամշակութ., տեղեկատվ., վերլուծ. օրաթերթ (1990-ից, Երևան): Մինչև 2000-ը՝ ՀՀ ԳԽ, ապա՝ ԱԺ պաշտոնաթերթ, 2001-ից՝ «Հանրապետություն» ՓԲԸ-ի հրտ-յուն: Խմբ-ներ՝ Այդին Մուրիկյան, Մեսրոպ Հարությունյան, Լիզա Ճաղարյան, Աշոտ Աղաբաբյան, Տիգրան Ֆարմանյան (2001-ից):

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԱՅՆ», քաղ., հաս., գր. պարբերաթերթ (1919–20, Երևան): *«Վան-Տոսպ»* շաբաթաթերթի շարունակությունը: Խմբ.՝ Արտակ Դարբինյան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ (ՀՃԱ), բնական, տեխ. և տնտ. գիտ-յունների բնագավառների գիտնականների, գիտաշխատողների, արտադր-յան ղեկ-ների և մասնագետների գիտատեխ. միություն: Հիմնադրվել է 1992-ին՝ ԽՍՀՄ ճարտարագիտ. ակադ-ի հայկ. մասնաճյուղի հիման վրա՝ որպես *Միջազգային ճարտարագիտական ակադեմիայի* (ՄՃԱ) հիմնադիր և կոլեկտիվ անդամ: Հիմն. խնդիրը առաջատար գիտնականների ու ճարտարագետների ուժերի միավորմամբ առավել կարևոր և հեռանկար. հետազոտություններ ու մշակումներ իրականացնելն է՝ նոր տեխնիկայի, տեխնոլոգիաների և նյութերի ստեղծման համար, որոնք կապահովեն գիտ-յան ու տեխնիկայի առաջընթացը: 1998-ից հրատարակել է (տարեկան 4 անգամ) «Ինֆորմացիոն համակարգեր, տեխնոլոգիաներ և ղեկավարում» գիտատեխ. ժող-ը, 2004-ից՝ ՄՃԱ-ի հետ՝ «*Լրաբեր Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի*» ամսագիրը: Նախագահներ՝ Յուրի Խոջամիրյան, Սերգեյ Մինասյան (2003-ից):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ, ստեղծագործ. կազմ-յուն: Հիմնադրվել է 1937-ին Երևանում (վարչության հիմնադիր-նախագահ՝ Գևորգ *Քոչար*): Համակարգել է հանրապետության ճարտ-ների աշխ-ը, նպաստել քաղաքաշինության և ճարտ-յան, հուշարձանների պահպանությանը ևն: Նախագահներ (կամ 1-ին քարտուղար)՝ Եղիշե Համբարձումյան, Սամվել Սաֆարյան, Հովհաննես Բաբաջանյան, Հովհաննես Մարգարյան, Վարազդատ Հարությունյան, Արծվին Գրիգորյան, Ալբերտ Զուրաբյան, Մկրտիչ Մինասյան (1999-ից՝ 1-ին քարտուղար, 2002-ից՝ նախագահ):

ՀՃՄ մասնաճյուղեր են գործում Լոս Անջելեսում (2005) և Սոսկվայում (2006):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԴԱՏ 1920, *Ազգերի լիգայի* պակտով սահմանված վարչ. կառավարման կարգ, որը նախատեսվում էր տարածել Հայաստանի վրա: *Փարիզի հաշտության* համաժողովի որոշումներից էր, ըստ որի՝ Օսմ. կայսրության որոշ ժողդ-ներ, նաև հայերը, իրենց ազգ. կյանքի հետագա կազմակերպման համար կարիք ունեին եվրոպ. երկրների խնամակալության՝ մանդատի, մինչև նրանք (Հայաստան, Սիրիա, Միջագետք, Պաղեստին, Արաբիա) կկարողանային ինքնուրույնաբար ապահովել իրենց գոյությունը: Դաշնակիցների կարծիքով՝ Հ. մ. կարող էր ընդունել ԱՄՆ-ն: Նախագահ Վ. Վիլսոնը ԱՄՆ Սենատից խնդրել է Հ. մ. ընդունելու թույլտվություն, սակայն Սենատը 1920-ի հունիսի 1-ին մերժել է նախագահի առաջարկը, և դրանով մանդատի հարցը փակվել է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՀՆՄ), հանրապետության նկարիչներին, քանդ-ներին և արվեստաբաններին միավորող ու աջակցող հաս-ստեղծագործ. կազմ-յուն: Հիմնադրվել է 1932-ին: ՀՆՄ մասնաճյուղեր ունի Գյումրիում և Վանաձորում: Կազմակերպում է անհատ., խմբային, հանրապետ., թեմատիկ և այլ բնույթի ցուցահանդեսներ, դասախոսություններ, հանդիպումներ: ՀՆՄ տնօրինում է Հայաստանի նկարիչների տունը (հիմն.՝ 1935, Երևան): ՀՀ հռչակումից հետո ընդլայնվել են միության միջազգ. կապերը (ցուցահանդեսներ արտերկրում, փոխայցելություններ ևն): Նախագահներ՝ Արա Սարգսյան (հիմնադիր-նախագահ), Մարտիրոս Սարյան, Գաբրիել Գյուրջյան, Ռուբեն Պարսամյան, Մհեր Արեղյան, Սուրեն Սաֆարյան, Սարգիս Մուրադյան, Արա Շիրազ, Պողոս Հայթայան, Կարեն Ադամյանը (1998-ից):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՇՐՋԻԿ ԱՐՎԵՍՏԱՆՈՑ, հիմնադրվել է 1939-ին՝ ՀՆՄ-ին կից՝ Գաբրիել *Գյուրջյանի* նախաձեռնությամբ: Տեսակով միակն էր ԽՍՀՄ-ում: Ստեղծագործ. արշավախմբեր է կազմակերպել ՀՀ-ում և նրա սահմաններից դուրս՝ նկարիչներին առօրյա կյանքին հաղորդակից դարձնելու, տեղում նյութեր հավաքելու, թեմատիկ նկարներ, դիմանկարներ, բնանկարներ ստեղծելու համար: 1994-ից գործում է որպես ՀՀ ցուցահանդեսային կենտրոն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ (ՀՊԹ), հիմնադրվել է 1919-ին՝

որպես ազգագր. թանգարան–գրադարան (մինչև 1927–ը վարիչ՝ Երվանդ *Լալայան*): Բացվել է 1921–ին Երևանում (1922–31–ին՝ Մշակութապատմ., 1931–35–ին՝ Պատմ., 1936–2003–ին՝ Պատմության պետ. թանգարան): 1991–ին ներառել է Հայաստանի հեղ–յան պետ. թանգարանը (հիմն.՝ 1921, 58 հզ. ցուցանմուշ): ՀՊԹ ներկայացնում է Հայաստանի մշակույթի և պատմության ամբողջ. պատկերը նախապատմ. ժամանակներից (1 մլն տարի առաջ) մինչև մեր օրերը: Թանգարանում պահպանվում և ցուցադրվում են հնագիտ., ազգագր. և պատմ. նշանակության 400 հզ–ից ավելի (շուրջ 8 հզ–ը՝ մշտ. ցուցադրությամբ) ցուցանմուշներ: Տնօրեններ՝ Կարո Ղաֆադարյան, Մորուս Հասրաթյան, Բորիս Ղարիբյան, Տելեմաք Խաչատրյան, Անելկա Գրիգորյան, Գրիգոր Գրիգորյան (2015–ից):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԲԱՐՎԵՍՏԻ ԱՆՍԱՄԲԼ պետական, հիմնադրվել է 1987–ին Երևանում (մինչև 1991–ը՝ «Բարեկամություն», հիմնադիր և գեղ. ղեկ.՝ Նորայր *Մեհրաբյան*), վաստ. կոլեկտիվ (2008–ից): Պարացանկում՝ աշխարհի ժողդ–ների պարեր, նաև հայ, արևմտաեվրոպացի և ռուս կոմպոզիտորների երկերի բեմադրություններ (Ա. Բաբաջանյանի ‹‹Նոկտյուռն››, Կոմիտասի «Ծիրանի ծառ», Յ. Ս. Բախի «Ադաջջո» ևն): Անսամբլում ազգ. պարեր են բեմադրել Վ. Կուրբետը (Մոլդովա), Օ. Մ. Վինոգրադովը (Ռուսաստան), Ս. Դգներաձեն (Վրաստան), Ա. Ժեմելկոն (Լեհաստան) և ուր.:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԻ ԱՆՍԱՄԲԼ պետական, վաստ. կոլեկտիվ (1978–ից), հիմնադրվել է 1958–ին Երևանում: Գեղ. ղեկ–ներ՝ Է. Մանուկյան (մինչև 1966–ը), Ա. Ղարիբյան (1966–68), Վ. Խանամիրյան (1968–92), Ա. Կիզիրյան (1992–93), Ս. Չանչուրյան (1993–2005), երաժշտ. մասի ղեկ.՝ Խ. Ավետիսյան (1958–72), գլխ. բալետմայստեր՝ Ա. Կարապետյան (1993–ից), տնօրեն՝ Է. Չանչուրյան (2007–ից): Անսամբլում պարեր են բեմադրել նաև Ի. Աբրատովը (Ցաղության), Վ. Ռաշիդյանը: Պարացանկում՝ ազգագր., թեմատիկ պարեր և պար. պատկերներ («Բերդ», «Սարդարապատ», «Էնզելի», «Քոչարի», «Սասունի պարերի շարք», «Ղարաբաղի կանանց պար» ևն): ՀԼԿԵՄ մրց. (1976):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԳԱՉԱԽՈՒՄԲ, վաստ. կոլեկտիվ (1969–ից), ակադեմ. (1975–ից), ազգ. (2012–ից), հիմնադրվել է 1937–ին Երևանում (հիմնադիր և գեղ. ղեկ.՝ Թաթուլ *Ալթունյան*): Հայկ. դաս. խմբերգ. երաժշտության լավագույն մեկնաբան: Գեղ. ղեկ–ներ՝ Արամ *Տեր–Հովհաննիսյան* (1939–60–ին, ընդմիջումով), Հովհաննես *Չեքիջյան* (1961–ից, նաև գլխ. դիրիժոր): Երկացանկում՝ ազգ., դաս. և արդի եվրոպ., ամերիկ. (շուրջ 700) ստեղծագործություններ: «La Voix de Paris» ֆիրմայի ձայնասկավառակն արժանացել է «Գրան պրի» միջազգ. մրց–ի (1970, Փարիզ):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, կազմավորվել է 1975–ին՝ ԵՊՀ տնտեսագիտ. (հիմն.՝ 1921), ապրանքագիտ–յան և առևտրի էկոնոմիկայի (հիմն.՝ 1964), Մոսկվայի կոոպերատիվ ինստ–ի Երևանի հեռակա (հիմն.՝ 1962) ֆակ–ների միավորմամբ: Մինչև 1999–ը՝ Երևանի ժողտնտ–յան ինստ., 1999–2006–ին՝ Երևանի պետ. տնտեսագիտ. համալսարան: Ունի 6 ֆակ., մասնաճյուղեր՝ Գյումրիում, Եղեգնաձորում: 2015–ին ուներ 7,5 հզ. ուսանող: Ռեկտորներ՝ Վլադիմիր Ներկարարյան, Շավարշ Մարգարյան, Լևոն Վարդանյան, Թորգոմ Նալչաջյան, Գրիգոր Կիրակոսյան, Յուրի Սուվարյան, Կորյուն Աթոյան (2011–ից):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ, հիմնադրվել է 1922–ին Երևանում՝ Ազատ Վշտունու, Գևորգ Պարիսի, Վահրամ Ալազանի, Գուրգեն Վանանդեցու և ուր. նախաձեռնությամբ: Հետագայում ասոցիացիայի ղեկ. կազմի մեջ են մտել նաև Նահիր Զարյանը, Գևորգ Աբովը, Նորայր Դաբաղյանը, Հայկ Գյուլիքևխյանը և ուր.: Պաշտոնաթերթը «Մուրճ» (1922–23) պարբ–ն էր: Ղեկավարվելով «գրականության կուսակցականության սկզբունքով»՝ Հ. պ. գ. ա. անդամագրել է բանվ. միջավայրից ելած և պրոլետ. թեմատիկայով ստեղծագործող գրողներ: «Պրոլետգրականության» ընթացքից դուրս է համարվել նաև Եղիշե Չարենցը: 1925–ին վերջինիս նախաձեռնությամբ հիմնադրվել է «*Նոյեմբեր*» միությունը, և սկսվել է երկուստեք պայքար: 1926–ին Հ. պ. գ. ա. և «Նոյեմբերը» միավորվել են՝ ստեղծելով Հայաստանի պրոլետ. գրողների միությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՀԵՂԱՓԽԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ (ՌՀԿ, ռազմահեղկոմ, հեղկոմ), ռազմաքաղ. մարմին (նախագահ՝ Սարգիս *Կասյան*): Կազմավորվել է 1920–ի նոյեմբ–ին Բաքվում: Նպատակը Հայաստանում խորհրդ. իշխանության հաստատումն էր: 1920–ի նոյեմբ. 29–ին ՌՀԿ Խորհրդ. Ռուսաստանի 11–րդ Կարմիր բանակի զորամասերի ուղեկցությամբ մտել է Քարվանսարա (այժմ՝ Իջևան՝ ՀՀ Տավուշի մարզում) և Հայաստանը հռչակել խորհրդ.: ՌՀԿ Երևան ժամանել է դեկտ. 6–ին և Հայաստանի ողջ իշխանությունը կենտրոնացրել իր ձեռքում: Գոյատևել է մինչև 1921–ի մայիսի 21–ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀՌԱԿ), կազմավորվել է 1990–ի սկզբին, պաշտոնապես գրանցվել 1991–ի հուլիսին: Գաղափարախոս. առումով ՀՌԱԿ *Ռամկավար ազատական կուսակցության* հետևորդն է: Նպատակը Հայաստանի անկախ, ինքնիշխան, ռամկավար և ազատական սկզբունքների վրա հիմնված պետության կայացմանը նպաստելն է: 2009–ին կուս–յան ներքին պառակտման հետևանքով ստեղծվել է Արմենական–Ռամկավար ազատ. կուս–յունը, իսկ 2012–ին դրանց միավորումով՝ ՀՌԱԿ:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԼՐԱԲԵՐ», գիտագործն. եռամսյա հանդես (1993–ից, Երևան, հոդվածները՝ հայ., ռուս., անգլ.): Ա. Միքայելյանի անվ. վիրաբուժության ինստ–ի հրտ.: Հիմնադիր–խմբ.՝ Համլետ *Թամազյան*, խմբ–ներ՝ Ալֆրեդ Մկրտչյան, Արմենակ Էնֆենջյան (2011–ից):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՂԱՅԻՆ ՆԱՎԱԳԱԽՈՒՄԲ պետական, հիմնադրվել է 1964–ին Երևանում (մինչև 1970–ը՝ «Երևան» փող. նավագախումբ): 1964–88–ին՝ գեղ. ղեկ. և գլխ. դիրիժորներ՝ Հ. Մեսիայան, Լ. Մեսիայան, Վ. Փիրումյան, Հ. Լոգյան, Ս. Աբրահամյան, 2000–ից՝ Հ. Հովակիմյան: «Ոսկե շեփոր» (1977, Կոլին), Փող. նվագախմբերի միջազգ. (1985, Լյուքսեմբուրգ) մրցույթ–փառատոների ոսկե մեդալներ:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐԻԿ ԵՐԳԻՉՆԵՐ», երգչախումբ: Ստեղծվել է 1992–ին Երևանում՝ «Հայ փոքրիկ երգիչներ» մանկ. միջազգ. ընկերակցությանը կից (գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր՝ Տիգրան *Հեքեքյան*): Երգացանկում՝ հայ հոգևոր, ժող., դաս., արդի, նաև եվրոպ. ու ամերիկ. դաս., արդի և ջազ. գործեր: 1995–ին «Խաղաղություն աշխարհին» խորագրով համերգներով շրջագայել է (նվիրված ՄԱԿ–ի և ՅՈՒՆԵՍԿՕ–ի 50–ամյակին) Եվրոպայում և ԱՄՆ–ում, Բազելի միջազգ. փառատոնում ճանաչվել է լավագույնը (1995), իսկ «Գոլդն Գեյթ» միջազգ. մրցույթում (1995, Սան Ֆրանցիսկո, ԱՄՆ) արժանացել է գլխ. մրց–ի, 1 ոսկե և 1 արծաթե մեդալի: Կազմակերպել է մանկ. երգչախմբերի մրցույթ–փառատոն (1996): «Վահան Թեքեյան» մրց. (2004):

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ», գիտ. եռամսյա հանդես (1947–ից, Երևան, հոդվածները՝ հայ., ռուս., անգլ.): ՀՀ ԳԱԱ հրտ–յուն: Խմբ–ներ՝ Արմենակ Մնջոյան, Գուրգեն Թադևոսյան, Մայա Ինճիկյան, Արաքսի Բաբայան, Արամ Նալբանդյան, Սարգիս Վարդանյան, Ադոլֆ Մանթաշյան, Աշոտ Սաղյան (2008–ից):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ (ՀՕԿ), հաս. կազմ–յուն: Հիմնադրվել է 1921–ի սեպտ. 13–18–ին Երևանում: Նախագահ՝ Հովհաննես *Թումանյան*: ՀՕԿ–ի խնդիրը երկրի սովյալ բնակչությանն օգնելն էր, սկսված շին–յանն օժանդակելը, աշխարհասփյուռ հայությանը հայրենիքի շուրջ համախմբելը: Ուներ 200 տեղ. մասնաճյուղեր Թիֆլիսում, Բաթումում, Բաքվում, Մոսկվայում, Կիևում, Խարկովում, Հս. Կովկասում, Միջին Ասիայում, արտերկրի հայաշատ վայրերում: 1937–ին ՀՕԿ–ը լուծարել են՝ այն համարելով օտարերկրյա գործակալությունների ու լրտեսների կազմ–յուն, իսկ նրա ղեկ–ներին բռնաղատել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ (ՀՖՆ) **պետական**, վաստ., ազգ. (2014–ից), մինչև 1991–ը՝ Հայաստանի սիմֆ. նվագախումբ [հիմն.՝ 1941, Երևանում, գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր՝ Կ. Սարաջև (1941–45), դիրիժոր՝ Ի. Խարաջանյան (1941–46)]: Նվագախումբը ղեկավարել են Մ. Մալունցյանը, Օ. Դուրյանը, Ռ. Վարդանյանը, Ա. Քաթանյանը, Դ. Խանջյանը, Վ. Գերգիևը, Ռ. Մանգասարյանը, Մ. Ներսիսյանը, Վ. Պապյանը, Լ. Ճգնավորյանը, 2000–ից՝ Էդվարդ *Թոփչյանը*: Կազմակերպում է համերգաշարեր, սիմֆ. երաժշտության փառատոներ («Աշխարհը և մենք», «Արամ Խաչատրյան–90», «Մոցարտ–200», «Եղեռնից մինչև անկախություն, եղել ենք, կանք ու կլինենք», «Հոգևոր երաժշտության ժամ» ևն): ՀՖՆ–ին կից 1994–ին հիմնադրվել է երգչախումբ (խմբավար՝ Գ. Մուրադյան):

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ (ՀԱԵ), **Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցի**, Արևելյան ուղղափառ եկեղեցիներից, հայ ժողդ–ի ազգ. եկեղեցին: Կենտրոնը՝ Սբ Էջմիածնի վանք (Մայր աթոռ Սբ Էջմիածին, Վաղարշապատ): ՀԱԵ մեկ միություն է, որի գլուխը կաթողիկոսն է: Հայ եկեղեցին կոչվում է առաքել., որովհետև այն հիմնադրել են Հիսուս Քրիստոսի առաքյալներ *Թադեոսը* և *Բարթողիմեոս*–

ար: 301-ին՝ Հայոց ***Տրդատ Գ*** թագավորի օրոք, ***Գրիգոր Ա. Լուսավորչի*** ջանքերով քրիստոնեությունը պաշտոնապես հռչակվել է Մեծ Հայքի թագավորության պետ. կրոն: Այդ թվականը համարվում է ՀԱԵ-ի պաշտոն. հիմնադրման տարեթիվ: Մինչև 368-ը Հայոց կաթողիկոսները ձեռնադրվել են Կեսարիայում, Պապ թագավորի հատուկ կարգադրությամբ Հայոց կաթողիկոսներն սկսել են ձեռնադրվել Հայաստանում: 303-ին կառուցվել է Էջմիածնի Մայր տաճարը, որը դարձել է ՀԱԵ կաթողիկոսի գահանիստը: Հայ եկեղեցին 451-ին մերժել է Քաղկեդոնի ժողովի որոշումները և առանձնացել որպես ինքնուրույն եկեղեց. կազմ-յուն: 506-ին Դվինի եկեղեց. ժողովում ՀԱԵ վերջնականապես խզել է իր կապերը քաղկեդոն. եկեղեցուց և դարձել ինքնուրույն: ՀԱԵ կազմում են ***Կաթողիկոսություն Ամենայն հայոցը, Կաթողիկոսություն Մեծի Տանն Կիլիկիոն, Երուսաղեմի հայոց պատրիարքությունը, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությունը***: ՀՀ տարածքում գործում են Արարատյան հայրապետ., Շիրակի, Գուգարքի, Սյունյաց, Արմավիրի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լ՚ՂՀ-ում՝ Արցախի, ՀՀ տարածքից դուրս՝ Վրաստանի, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի, Հվ. Ռուսաստանի, Ուկրաինայի, Ատրպատականի, Թեհրանի, Սպահանի, Եգիպտոսի, ԱՄՆ-ի Արլ. և Արմ., Արգենտինայի, Բրազիլիայի, Ուրուգվայի, Կանադայի, Իրաքի, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի, Սիբիրայի, Հունաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի, Գերմանիայի, Շվեյցարիայի թեմերը, Արմ. Եվրոպայի, Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի հայրապետ. պատվիրակությունները, վան. միաբանություններ, համայնք. հովվություններ: Հայ եկեղեցին ունի իր ներկայացուցիչները Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարքությունում և Քենթրբերիի ու Համայն Անգլիո արքեպիսկոպոսությունում: Մայր աթոռ Սբ Էջմիածնում գործում է հոգևոր բարձրագույն ուս. հաստատություն՝ ***Գևորգյան ճեմարանը,*** Սևանում՝ ***Վազգենյան հոգևոր դպրանոցը***, Շիրակի թեմում՝ ***Հառիճի ընծայարանը***: ՀԱԵ իրականացնում է գրահրատարակչ. գործունեություն, լույս է ընծայում նաև ***«Էջմիածին»*** հանդեսը, ***«Քրիստոնյա Հայաստան»*** երկշաբաթաթերթը:

«ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ», հոգևոր, ազգ., պատմ., գր., կրթամշակութ. ամսաթերթ (2007–ից, Մոսկվա՝ հայ., ռուս.): ՀԱԵ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի պաշտոնաթերթ: Խմբ-ներ՝ Ռուբեն Հայրապետյան, Հասմիկ Գրիգորյան (2008–ից):

ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 652, կնքել են Թեոդորոս Ռշտունին և Ասորիքի ու Միջագետքի կուսակալ Մուավիան Դամասկոսում: Արաբ. խալիֆության գերիշխանությունը ճանաչելու պայմանով՝ Հայաստանը 3 տարով ազատվել է հարկավճարից, պահպանել իր զորքերը և ինքնուրույնությունը, արաբները պարտավորվել են զորք չմտցնել Հայաստան, իսկ երրորդ ուժի հարձակման դեպքում պաշտպանել Հայաստանի սահմանները:

ՀԱՅ-ԱՐՏՅԱՆ (Հարությունյան) Արտաշես Թադևոսի (1899–1978), կինոռեժ.: ՀԽՍՀ ժող. արտիստ (1966): 1925-ից՝ Մոսկվայի Պետկինոյի 1-ին ֆաբրիկայի («Պյոտր Իվանովիչ», 1932, ևն), 1935-ից՝ Հայֆիլմի ռեժ. («Պատվի համար»՝ ըստ Շիրվանզադեի, 1956, «Հյուսիսային ծիածան», 1961, «Լալվարի որսկանը»՝ ըստ Վ. Միրաքյանի, 1966, ևն): Հեղինակ է կինոսցենարների:

ՀԱՅԱՐՏՈՒՆ, ***Հայ արվեստի տուն***, գր., մշակութ., հաս. կազմ-յուն (1920–30-ական թթ.): Հ-եր ստեղծվել են հիմնականում ՀՀ-ից դուրս՝ հայաշատ քաղաքներում (Երևան, Կ. Պոլիս, Թիֆլիս, Բաքու, Բաթում), որոնց նպատակը տեղի հայ գրողների և արվեստագետների ստեղծագործության ու արվ-ի տարածումն էր, հայ բնակչության գեղագիտ. դաստիարակությունը՝ կապելով նրանց մայր հայրենիքի մշակութ. կյանքին:

«ՀԱՅԱՋՔ», հաս-քաղ., մշակութ. օրաթերթ (2010–ից, Երևան): Հիմնադիր-խմբ.՝ Աշոտ ***Աղաբաբյան:***

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ, բանկ. կազմ-յուն ՀՀ-ում: Հիմնադրվել է 1991-ին՝ որպես «Արմինվեստբանկ» փայատիրական բանկ (1994-ից՝ ՓԲԸ), 2006-ին վերանվանվել «Հ.» ՓԲԸ: Ընդհ. ակտիվները՝ 337,4 մլրդ դրամ (2016):

ՀԱՅԴ ՊԱՐԿ (Hyde Park), Լոնդոնի առավել խոշոր պարկերից, քաղաք. ցույցերի և հավաքների ավանդ. հավաքատեղին:

ՀԱՅԴԱՐ ԱԼԻ (1722–1782), Մայսուրի հնդ. իշխանության կառավարիչ՝ 1761-ից, անգլիացի գաղութարարների դեմ դիմադրության կազմակերպիչ Հվ. Հնդկաստանում: 1-ին անգլո-մայսուր. պատերազմում (1767–69) պարտության է մատնել անգլիացիներին:

ՀԱՅԴԱՐԱԲԱԴ (Haydarabad), 1. ք. Հնդկաստանում՝ Մուսի և Ուսի գետերի միախառնման վայրում: Անդհրա-Պրադեշ նահանգ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝4,1 մլն (ագլոմերացիայով՝ 6,4 մլն, 2010): Հվ. Հնդկաստանի տնտ. և մշակութ. կարևոր կենտրոն է: Հ-ի տնտ. հիմքը տեղեկատվության և կենսատեխնոլոգիայի բնագավառներն են, գործարար, մասնագիտ. և այլ ծառայություններ: Ունի համալսարան, գղտ. հետազոտ. կենտրոն: Հիմնադրվել է XV դ-ում, եղել է Հվ. Հնդկաստանի պատմ. մայրաքաղաքը:

Հ-ում հայերը հաստատվել են XVI–XVII դդ-ում: XIX դ-ում այնտեղ այլևս հայ համայնք չի հիշատակվում:

2. Ք՚ Պակիստանում, նվինգստ՝ Ինդուս գետի ափին, Սինդ պրովինցիայում: Բն.՝ 1,4 մլն (2012): Զարգացած են տեքստիլ, սննդի, քիմ. արդ-յունները, մեքենաշինությունը:

ՀԱՅԴԱՐԱԲԱԴ, Հնդկաստանի խոշորագույն իշխանություններից, այնուհետև (մինչև 1956-ը)՝ նահնգ-ներից: 1768–1947-ին եղել է Անգլիայի գերիշխանության տակ: 1948-ին մտել է Հնդ. միության մեջ: 1950-ին դարձել է Հնդկաստանի Հանրապետության նահնգ: 1956-ին Հ. միացվել է Անդհրա-Պրադեշ, Մայսուր (1973-ից՝ Կառնատակա), Մահարաշտրա նահնգ-ներին:

ՀԱՅԴԵԳԵՐ (Heidegger) Մարտին (1889–1976), գերմանացի փիլ., գերմ. էկզիստենցիալիզմի հիմնադիրներից: Զարգացրել է գոյի մասին ուսմունք («հիմնարար գոյաբանություն»), որի հիմքում իրական գոյության (էկզիստենցիա) և առօրեական աշխարհի հակադրումն է: Հ. ուշ շրջանի գործերում անդրադարձել է մտածողության «մետաֆիզիկական» ձևի ծագմանը, որը բնորոշվել է որպես «կեցության մոռացություն»:

ՀԱՅԴԵԼԲԵՐԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ Ռուպրեխտի և Կառլի անվան, Եվրոպայի հնագույն համալսարաններից: Հիմնադրվել է Գերմանիայում 1386-ին: Դասավանդել են փիլ-ներ Գ. Հեգելը և Ֆ. Ֆիշերը, քիմ. Ռ. Բունզենը, ֆիզիկոս Գ. Կիրխհոֆը, բնագետ Գ. Հելմհոլցը, պատմաբան Ֆ. Շլոսերը և ուր.: 2015-ին ուներ շուրջ 28 հզ. ուսանող:

ՀԱՅԴԵԼԲԵՐԳՅԱՆ ՄԱՐԴ, ***մաուերյան մարդ***, պեղածո մարդու տեսակ: 1907-ին Գերմանիայի Հայդելբերգ բ-ի Մաուեր գ-ի մոտ հայտնաբերվել է մարդու ստորին ծնոտ՝ ատամների ամբողջ կազմով: Բացարձակ տարիքը՝ 400 հզ. տարի: Մոտ 900 հզ. տարի առաջ առաջացել ու զարգացել է Աֆրիկայում [ինագույն գտածոն՝ 600 հզ. տարի առաջ՝ գանգ Բոդոյից (Եթովպիա)], մոտ 800 հզ. տարի առաջ հայտնվել է Եվրոպայում, տարածված է եղել Առաջավոր Ասիայում, Կովկասում, Հնդկաստանում, Չինաստանում, Ինդոնեզիայում:

ՀԱՅԴԵՆ (Heiden) Էրիկ (ծ. 1958), ամերիկացի չմշկորդ: Օլիմպ. խաղերի (1960, 5 ոսկե մեդալ), աշխարհի բազմակի (1977–80) չեմպիոն:

ՀԱՅԴԵՆՀԱՅՆ (Heidenhain), գերմանացի գիտնականներ, հայր և որդի. 1. **Ռուդոլֆ Պետեր Հայնրիխ Հ.** (1834–1897), ֆիզիոլոգ, հյուսվածաբան: Ֆիզիոլոգ. և հյուսվածաբան. մեթոդների համատեղ կիրառմամբ բացահայտել է գլխուղեղի մեծ կիսագնդերում գտնվող որոշակի կետերի արգելակող ազդեցությունը կմախք. մկանների վրա: Ապացուցել է, որ ստամոքսում պեպսինը և աղաթթուն արտազատվում են տարբեր գեղձ. բջիջներից, և առաջարկել է ստամոքսի մեկուսացման մեթոդ, որը հետագայում կատարելագործել է Ի. Պ. ***Պավլովը***: 2. **Մարտին Հ.** (1864–1949), հյուսվածաբան: Իր մշակած ներկման մեթոդով հանգստացող բջիջներում հայտնաբերել է ցենտրոսոմները, նկարագրել է կմախք. և սրտի մկանների կառուցվածքը:


ՀԱՅԴՆ (Haydn) Յոզեֆ (1732–1809), ավստրիացի կոմպոզիտոր: Յ. Մ. ***Հայդնի*** եղբայրը: Հեղինակ է բազմաթիվ սիմֆոնիաների, կվարտետների, դաշնամուր. սոնատների, օրատորիաների («Աշխարհի ստեղծումը», 1798, «Տարվա եղանակները», 1801), մեսսաների, օպերաների և այլ գործերի:

ՀԱՅԴՆ Յոհան Միխաել (1737–1806), ավստրիացի կոմպոզիտոր, երգեհոնահար: Յ. ***Հայդնի*** եղբայրը: Շվեդ. թագավոր. երաժշտ. ակադ-ի անդամ (1804): Հոգևոր ստեղծագործություններում (32 լատ. մեսսաներ, այդ թվում՝ Մեսսա Սբ Կիրիլին և Մեֆողիին, 1758, 8 գերմ. մեսսաներ, 2 ռեքվիեմ, 6 Տե դեում, 10 Tantom ergo, 11 Calve regina, Գերմ. մագնիֆիկատ) պոլիֆոնիայի այսպես կոչված հին ոճի ավանդույթները զուգակցել է դաս. ոճի տարրերի հետ: Հեղինակ է «Անդրեադա և Պերաես» (1787) օպերայի, նաև զինզշպիլների, օրատորիաների, սիմֆոնիաների, կոնցերտների, կամեր-գործիք. անսամբլների և այլ գործերի:

ՀԱՅԴՈՒԿ (հունգ.՝ hayduk – հետևակ), 1. Հունգարիայում, նախն. իմաստով՝ անասուններ քշող, տեղափոխող, այնուհետև՝ թուրք. հետապնդումներից անտառներում թաքնվող, XVIII դ-ից՝ ներկայացուցչ. նիստի (ատյանի) աշխատակից:

2. Հունգարների և հվ–սլավն. ժողդ–ների՝ թուրք. զավթիչների և նրանց հետ համագործակցող տեղացի ավատատերերի դեմ պայքարող: 3. Արմ. Հայաստանում (XV–XIX դդ.) նույնն է, ինչ ***ֆիդայի***:

ՀԱՅԵԼԱՅԻՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄ (մաթ.), տվյալ հարթության նկատմամբ տարածության ձևափոխություն, որի դեպքում հարթության կետերը մնում են անշարժ, իսկ այդ հարթության մի կողմի որևէ P կետի համապատասխանում է նրա մյուս կողմի P′ կետն այնպես, որ հարթությունն ուղղահայաց է PP′ հատվածին և անցնում է նրա միջնակետով: Տես նաև ***Համաչափություն***:



ՀԱՅԵԼԱՅԻՆ ՄԻՋՈՒԿՆԵՐ, ***իզոբար միջուկների*** զույգեր, որոնք փոխարկվում են մեկը մյուսին, երբ պրոտոնները փոխարինվում են նեյտրոններով, նեյտրոնները՝ պրոտոններով. օր.՝ $^{3}H–^{3}He$, $^{14}C–^{14}O$:

ՀԱՅԵԼԻ, 1. անդրադարձնող մակերևույթով ապակե կամ մետաղե մարմին, որի մակերևույթը հղկված է այնպես, որ նրա անհարթությունները չեն գերազանցում ալիքի (էլեկտրամագնիս. կամ ձայն.) երկյան մասը: 2. Ջրի հանգիստ, հարթ մակերևույթը: 3. Որևէ երևույթի, շարժընթացի ևնի անդրադարձը:

«ՀԱՅԵԼԻ», 1. ազգ., գր., երգիծ. շաբաթաթերթ (1897–1903, Վառնա, 1903–04, Ալեքսանդրիա): Խմբ.՝ Տիգրան Փափազյան: 2. Գեղ–երգիծ. շաբաթաթերթ (1906–07, Թիֆլիս): Խմբ–ներ՝ Բ. Ճեպեյան, Վ. Պետրոսյան: 1906–ին լույս է ընծայել «Հոպհոպ» հավելվածը:

«ՀԱՅԵԼԻ ԿԱԼԿԱԹԵԱՆ», ազգ., քաղ., գր. և առևտր. շաբաթաթերթ (1820, Կալկաթա): Կալկաթայի «Իմաստախնդրյան միաբանություն» հրտչ. ընկ–յան հրտ–յուն: Խմբ.՝ Հովհաննես Տեր–Հակոբյան:

«ՀԱՅԵԼԻ ՎԱՐՈՒՅ», միջնադար. բարոյախրատ. գրույցների ժող.: Ներառում է աստվածաշնչյան տասը պատվիրանները բովանդակող, միմյանց հարակցող գրույցներ: 1651–ին հայ. է թարգմանել Ստեփանոս Լեհացին՝ 2000 լատ. և լեհ. գրույցներից 247–ը (հրտ.՝ 1702):

ՀԱՅԵԼԻԿ, 1. որոշ ձկների, սողունների, գիշատիչների և ջր. կաթնասունների աչքի փայլուն գունակային թաղանթները, որոնք ուժեղացնում են տեսող. բջիջների լուս. գրգռումը: 2. Թռչունների (հատկապես՝ բադերի) արուների թևերի փետրավորման հատվածներ: 3. Աշխատավոր մեղուների մոմ արտադրող օրգանները: 4. Որոշ ծղրիդների արուների ձայն. (ճռռացող) ապարատի մաս:

ՀԱՅԵԽ, սրբազան աղբյուր Ուրմիա լճի արմ. կողմում՝ Նախիջևանթափա ք–ի մերձակա Նոյեմզար բլրի լանջին: Ըստ հայկ. ժող. ավանդության՝ այս աղբյուրի ջուրը խմելիս համրանում է այն մարդը, որը թեկուզ մեկ անգամ խաբել է իր մորը:

ՀԱՅԵԿ (Hayek) Ֆրիդրիխ Ավգուստ ֆոն (1899–1992), ավստրիացի տնտեսագետ և փիլ.: Աշխ–ները վերաբերում են ազատ. տնտ–յան և ազատ շուկայի հարցերին: Քննադատել է սոցիալիզմի տեսությունն ու պրակտիկան, ամբողջատիր. գաղափարախոսությունները, մատնանշել դրանց կառուցվածք. նմանությունը: Նոբելյան մրց. (1974, Գ. ***Մյուրդալի*** հետ):

ՀԱՅԵՐ, ազգ: Պատկանում են եվրասիական (եվրոպեոիդ) ռասայի ***արմենոիդ*** մարդաբան. տիպին: Որպես էթնիկ կազմավորում՝ առաջացել են հնդեվրոպ. ընդհանր. լեզվի տրոհման հետևանքով: Հ–ի, որպես ժողդ–ի, կազմավորումն ավարտվել է Արարատյան (Ուրարտու) պետության ժամանակաշրջանում (մ. թ. ա. IX–VI դդ.), և Հայկ. լ–աշխարհը եղել է այն պատմ. միջավայրը, որտեղ ընթացել է Հ–ի սոցիալ–տնտ., հաս–քաղ. կյանքը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Լեզուն ***հայերենն*** է: Քրիստոնյա են (***Հայաստանյայց առաքելական եկեղեցու*** հավատավորներ), որոշ Հ. դավանում են կաթոլիկություն, բողոքականություն:

Ներկայում (2016) Հ–ի ընդհ. թվաքանակն աշխարհում շուրջ 10 մլն է: ՀՀ (3,5 մլն) և Լ՚ՂՀ (145 հզ.) հիմն. բնակչությունը Հ. են: Խոշոր համայնքներ կան ՌԴ–ում (3 մլն), ԱՄՆ–ում (1,3 մլն), Ֆրանսիայում (500 հզ.), Վրաստանում (250 հզ.), Իրանում (80 հզ.), Թուրքիայում (80–100 հզ.), Մերձ. Արևելքի, Լատ. Ամերիկայի, Հս. Եվրոպայի, Արլ. Եվրոպայի և այլ երկրներում:

«ՀԱՅԵՐ», ազգ., հաս., մշակութ. երկշաբաթ. պարբերաթերթ (1993–2008, Բուրգաս՝ բուլղ.): Խմբ.՝ Գևորգ Սարաֆյան:

ՀԱՅԵՐԵՆ, հայոց լեզու, հայ ժողդ–ի ազգ., ՀՀ և Լ՚ՂՀ պետ. լեզուն: Հնդեվրոպ. լեզվաընտանիքի ինքնուրույն ճյուղ: Հնագույն գրավոր հուշարձաններն ավանդվել են V դ–ի սկզբից: Տարբերում են զարգացման 3 շրջան՝ հին Հ. (***գրաբար***, V–XI դդ.), ***միջին հայերեն*** (XII–XVI դդ.) և նոր Հ. (***աշխարհաբար***՝ 2 ճյուղավորումներով՝ ***արևելահայ գրական լեզու*** և ***արևմտահայ գրական լեզու***, XVII դ–ից մինչև մեր օրերը): Արևմտահայ գր. տարբերակն այժմ սփյուռքահայության ընդհ. հաղորդակցման լեզուն է: Տես նաև ***Լատինաբան հայերեն***, ***Հունաբան դպրոց***:

ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ***հայագիտության*** ճյուղ, լեզվաբ. գիտակարգերի համակարգ. ուսումնասիրում է հայոց լեզուն (տեսություն, պատմություն, համեմատ. քերակ–յուն, բարբառագիտ., բառարանագրություն, գրաբարի, միջին հայ–ի, արդի հայ–ի նկարագրակ. քերակ–յուն ևն): Հայտնի քերականներ են Դավիթ Քերականը, Անանուն Մեկնիչը, Մովսես Քերթողը, Ստեփանոս Սյունեցին, Համամ Արևելցին, Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, Վարդան Արևելցին, Եսայի Նչեցին, Գրիգոր Տաթևացին, Առաքել Սյունեցին, Հովհաննես Հոլովը, Սիմեոն Ջուղայեցին, Պաղտասար Դպիրը, Վ. Չալըխյանը, Մ. Աբեղյանը, Հ. Աճառյանը, Գ. Սևակը, Է. Աղայանը, Գ. Ջահուկյանը, Վ. Առաքելյանը, Ա. Աբրահամյանը, Ս. Աբրահամյանը, Հ. Պետրոսյանը, Ա. Սուքիասյանը, Ա. Սարգսյանը, Հ. Բարսեղյանը, Մ. Ասատրյանը, Վ. Քոսյանը, Ռ. Իշխանյանը և ուր.: Օտարազգի նշանավոր հայագետներ են Հ. Հյուբշմանը, Կ. Բրուգմանը, Ա. Մեյեն, Հ. Պեդերսենը, Է. Բենվենիստը, Կ. Շմիտը, Ռ. Գոդելը, Ն. Մառը, Է. Մակաևը, Թ. Գամկրելիձեն, Վ. Իվանովը և ուր.: Հայտնի են հայերենագիտ. մի շարք աշխ–ներ (Յ. Շրյոդերի «Գիանձ արամեան լեզուի», 1711, Մ. Չամչյանի «Քերականութիւն Հայկազեան լեզուի», 1779, Ա. Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի», 1866, Ս. Պալասանյանի «Ընդհանուր տեսութիւն արեւելեան նոր գրաւոր լեզուի հայոց», 1870, Մ. Աբեղյանի «Աշխարհաբարի քերականութիւն», 1906, «Հայոց լեզվի տեսություն», 1931, «Ժամանակակից հայոց լեզու», հ. 1–3, 1974–79, Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն», հ. 1, 2, 1940, 1951, Գ. Ջահուկյանի «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ», 1974, ևն), բառարաններից՝ Հ. Աճառյանի «Արմատական բառարան» (հ. 1–7, 1926–35), Ս. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան» (հ. 1–4, 1945–46), «Ռուս–հայերեն բառարան» (հ. 1–4, 1954–58), Ա. Սուքիասյանի «Հոմանիշների բառարան» (1967), Ա. Ղարիբյանի «Ռուս–հայերեն բառարան» (1969), «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» (հ. 1–4, 1969–80), Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական–ուղղախոսական բառարան» (1973), Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան» (հ. 1–2, 1976):

ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ, առարկայի անմիջական տեսող–զգայական ընկալումը: Հ. առհասարակ իրականության անմիջական արտացոլումն է ***ինտուիցիայի*** միջոցով կամ նրա բովանդակության ձևավորման ներքին գործընթացը:

ՀԱՅԶԵՆԲԵՐԳ (Heisenberg) Վեռներ Կառլ (1902–1976), գերմանացի ֆիզիկոս: Քվանտ. մեխանիկայի ստեղծողներից: Աշխ–ները վերաբերում են ատոմի միջուկի կառուցվածք., ռելյատիվիստ. քվանտ. մեխանիկային, դաշտի միասն. տեսությանը, ֆեռոմագնիսականությանը, բնագիտ–յան փիլ–յանը: Ստեղծել է (1925) քվանտ. մեխանիկայի մատրից. տարբերակը, ձևակերպել (1927) ***անորոշությունների սկզբունքը***, ներմուծել «գրման մատրիցա» հասկացությունը: Առաջարկել է փոխանակային փոխազդեցության գաղափարը: Նոբելյան մրց. (1932):

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, ֆինանսավարկ. ոչ պետ. բանկային կազմ–յուն ՀՀ–ում (ԽՍՀՄ «Բնակսոցբանկի» հայկ. մասնաճյուղի իրավահաջորդը): Հիմնադրվել է 1991–ին: Ունի 39 մասնաճյուղ ՀՀ–ում, 1–ը՝ Լ՚ՂՀ–ում, աշխատակիցների թիվը՝ 914, ընդհ. ակտիվները՝ 99.522 մլն ՀՀ դրամ (2015): Կենտրոնատեղին՝ Երևանում:

ՀԱՅ–ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ 1905–06, հայ–թաթար. (ադրբ.) ազգամիջյան բախումներ Այսրկովկասում՝ ռուս. 1–ին հեղ–յան (1905–07) ժամանակ: Հրահրել են ցար. իշխանությունները՝ ժողդ–ի ուժերը մասնատելու նպատակով: Սկսվել է 1905–ի փետր. 6–ին Բաքվում՝ նահանգապետ Մ. Նակաշիձեի դրդմամբ: Բաքվում վերսկսված (1905–ի օգոստ.) կռիվների ժամանակ սպանվել է շուրջ 400 մարդ: Հրդեհվել են հայերին պատկանող նավթահորերը (վնասը՝ շուրջ 25 մլն ռ.): Կռիվներ են տեղի ունեցել Ելիզավետպոլի նահ–ում (Շուշիում՝ 1905–ի օգոստ., 1906–ի հունիս), Նախիջևանում, Շարուր–Դարալագյազում, Զանգեզուրում, Երևանում (1905–ի մայիսի 23–25), Թիֆլիսում (1905–ի նոյեմբ.) և հայ ու թաթար խառը բնակչությամբ մյուս վայրերում: Առաջին օրերին հայերն անակնկալի են եկել և զգալի զոհեր տվել, ապա փոքրաթիվ, բայց կազմակերպված ջոկատներով դիմագրավել ու պարտության են մատնել թշնամուն: 1906–ի սեպտ–ին իշխանությունները դադարեցրել են բախումները:

ՀԱՅ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ 1920, Թուրքիայի զավթող. պատերազմը ՀՀ–ի դեմ: Սկսվել է սեպտ. 22–ին՝ Քյազիմ

Կարաբեքիրի գլխավորությամբ թուրք. զորքերի ՀՀ տարածք ներխուժմամբ: Սեպտ. 29-ին գրավել են Սարիղամիշն ու Կաղզվանը, հոկտ. 30-ին՝ Կարսը: Նոյեմբ. 15-ին ՀՀ Կառ-յունն ընդունել է դեռևս նոյեմբ. 9-ին թուրքերի առաջարկած հաշտության ծանր պայմանները: 1920-ի դեկտ. 2-ին կնքվել է ***Ալեքսանդրապոլի պայմանագիրը***, որով Հայաստանը ճանաչել է իր պարտությունը և իշխանությունը զիջել բոլշևիկներին:

ՀԱՅԺ, քարայր, որը, ըստ ավանդազրույցի, Վանա լճի հատակում է, և որտեղ հանգրվանում են բոլոր հայ դյուցազունների հոգիները: Վերջիններս Հ-ում հսկում են բոլոր աղքատներին պատկանող միակտոր ոսկե ձույլը, որն իբր կշռում է 400 հգ. ձիաբեռ:

ՀԱՅԻԹԻ, կղզի Մեծ Անթիլյան կղզեխմբում, Վեստ Ինդիայում՝ Կարիբյան ծովում: Տարածքը՝ մոտ 76,4 հզ. *կմ*^{2}, բն.՝ 20 մլն և ավելի (2009): Բարձր.՝ մինչև 3175 *մ* (Դուարտե լ.): Կղզու տարածքում են Դոմինիկյան Հանրապետությունը և Հայիթիի Հանրապետությունը: Հայտնագործել է Ք. Կոլումբոսը 1492-ին և անվանել «Էսպանյոլ»:

ՀԱՅԻԹԻ, **Հայիթիի Հանրապետություն** (Republique d'Haiti), պետություն համանուն կղզու արմ.-ում: Սահմանակից է Դոմինիկյան Հանրապետությանը: Տարածքը՝ 27,7 հզ. *կմ*^{2}, բն.՝ 9,4 մլն (2009): Մայրաքաղաքը՝ ***Պորտ օ Պրենս:*** Պետ. լեզուները՝ ֆրանս. և հայիթիերեն (կրեոլերեն): Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է: Բաժանված է 10 վարչ. դեպարտամենտների: Անդամակցում է ՄԱԿ-ին, Լատ. Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրների ընկերակցությանը ևն: Արմ. կիսագնդի ամենաաղքատ երկիրն է, ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 1,3 հզ. ԱՄՆ դոլար է (2010): Արտահանում է նավթ, կակաո, սուրճ, արևադարձ. մրգեր, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, դեղեր, սննդամթերք, վառելանյութ ևն: Դրամ. միավորը՝ գուրդ:

Մինչև եվրոպացիների հայտնվելը (XV դ-ի վերջ) Հ-ում բնակվել են հնդկացիներ: 1492-ին Ք. Կոլումբոսը հայտնաբերել է կղզին և անվանել «Էսպանյոլ» (Իսպանիա): XVII դ-ի վերջին կղզու արմ. մասն անցել է Ֆրանսիային, արլ. մասը մնացել է Իսպանիային: 1791-ին ստրուկների տարերային ապստամբությունը վերաճել է անկախության պատերազմի, որը ղեկավարել է Ֆ. Դ. Տուսեն-Լուվերտյուրը: 1793-ին Սան Դոմինգո են մտել անգլ. զորքերը: Իսպանիան 1795-ին կղզու արլ. մասը զիջել է Ֆրանսիային: 1798-ին անգլ. զորքերը վտարվել են կղզուց, իսկ 1800-ին ամբողջ կղզին ազատագրվել է: 1801-ին Տուսեն-Լուվերտյուրը հայտարարել է ստրկության վերացման մասին և հռչակվել կղզու ցմահ կառավարիչ: 1804-ին Դեսսալինը հռչակել է կղզու անկախությունը, վերականգնել հինդնդ. Հ. անվանումը, իրեն հռչակել կայսր: Բնակչությանը հող բաժանելու քաղ-յունից դժգոհ խոշոր հողատերերը 1806-ին սպանել են Դեսսալինին: Երկրում սկսված երկպառակության հետևանքով 1807-ին Հ. տրոհվել է «Հայիթի պետության», որը գլխավորել է Դեսսալինի կողմնակից Ա. Քրիստոֆը, և «Հայիթի Հանրապետության», որը ղեկավարել են մուլատները՝ Ա. Պետիոնի գլխավորությամբ: 1821-ին Պետիոնիին հաջորդած գեն. Ժ. Պ. Բուայեն իր իշխանությունը տարածել է նաև երկրի հս-ում՝ ստեղծելով միասն. պետություն՝ Հ-ի Հանրապետություն: 1825-ին Ֆրանսիան ճանաչել է Հ-ի անկախությունը: 1844-ին կղզու արլ. (երբեմնի՝ իսպ.) մասն անջատվել և կազմել է ինքնուրույն պետություն՝ Դոմինիկյան Հանրապետությունը: 1915-ին ԱՄՆ նվաճել է Հ. և դարձրել ամերիկյան պրոտեկտորատ: ԵՀՊ-ի տարիներին (1939–45) Հ. դարձել է ԱՄՆ-ի ռազմ. և հումք. բազա: 1957–86-ին Հ. ղեկավարել են իրենց ցմահ նախագահ հռչակած Ֆ. Դյուվալիեն և որդին՝ Ժ. Կ. Դյուվալիեն: 2016-ին երկրի ղեկ. է ընտրվել Ժ. Պրիվերը (պաշտոնակատար):

ՀԱՅԻԹԻՑԻՆԵՐ (ինքնանվանումը՝ այիտյեն), կրեոլյան ժողդ, ***Հայիթի*** պետության հիմն. բնակչությունը (9,9 մլն): Ընդհ. թիվը՝ շուրջ 11,5 մլն (2010): Ապրում են նաև Վեստ Ինդիայի մյուս կղզիներում և Կանադայում (80,9 հզ.): Հիմնականում սևամորթներ են: Խոսում են հայիթիյան կրեոլերենով, որի հիմքում ֆրանսերենն է: Հիմնականում կաթոլիկ են, վուդուական պաշտամունքի հետևորդներ:

ՀԱՅԼԲՐՈՆ (Hailbronn), ք. Գերմանիայում՝ Բադեն-Վյուրտեմբերգ երկրում: Բն.՝ 122,1 հզ. (2010): Զարգացած են մեքենաշինությունը, քիմ., թղթի, սննդի արդ-յան ճյուղերը:

ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԼԵ I (մինչև թագադրությունը՝ Թաֆարի Մաքոնեն, 1892–1975), Եթովպիայի կայսր՝ 1930–74-ին: 1935–36-ի ***իտալա-եթովպական պատերազմի*** ժամանակ գլխավորել է պայքարն իտալացի զավթիչների դեմ: 1974-ի սեպտ-ին գահընկեց է արվել, 1975-ի օգոստ-ին՝ սպանվել:

ՀԱՅԿ, ըստ հայոց ծննդաբան. դիցավեպի՝ հայ ժողդ-ի անվանադիր նախնին և ռազմի գերագույն աստվածը: Ըստ դիցավեպի՝ Հ. եղել է Արարադ (Արարատ) երկրի տիրակալը: Բաբելոնից Արարադի երկիրը Հ-ի գալու ավանդությունը հորինվել է Հայաստանում քրիստոնեության հաստատումից հետո: Արարատյան պետության միաձուլված ցեղերը, իրենց համարելով համընդհ. և գերագույն պաշտամունք դարձած Հ-ի սերունդը, նրա անունով այնուհետև կոչվել են Հայկազունք, իսկ նրանց երկիրը՝ Հայք, Հայոց աշխարհ, Հայաստան: Հ. համարվում է նաև հայոց 1-ին տոմարադիրը, ժամանակի, տարվա չափ ու շրջան որոշողը, իսկ տարվա ամիսները կոչվել են Հ-ի ուստրերի ու դուստրերի անուններով: Տես նաև «***Հայկ և Բել***»:

«ՀԱՅԿ», վավերագր., գիտահանրամատչելի և կարճամետրաժ կինոնկարների ստուդիա: Հիմնադրվել է 1990-ին Երևանում՝ ***Հայֆիլմի*** վավերագր. ֆիլմերի ստեղծագործ. միավորման (1982–90, նախկինում՝ 1959-ից՝ Երևանի, 1982-ից՝ Հայաստանի վավերագր. ֆիլմերի կինոստուդիա) հիման վրա: Թողարկում է վավերագր., գիտահանրամատչելի, ուս. ֆիլմեր ու ակնարկներ («Յոթ երգ Հայաստանի մասին», 1967, ռեժ.՝ Գ. Մելիք-Ավագյան, «Կանչ», 1970, ռեժ.՝ Ա. Վահունի, «Սպասում», 1984, «Բիթլիսցի Վիլյամ Սարոյանը», 2008, ռեժ.՝ Ռ. Գևորգյանց, «Սպիտակ քաղաք», 1988, ռեժ.՝ Հ. Խաչատրյան, «Թատերական հրապարակ», 1988, ռեժ.՝ Գ. Հարությունյան, «Անվերջանալի պատմություն», 1998, ռեժ.՝ Բ. Շահիրազյան, ևն):

«ՀԱՅԿ ԵՎ ԲԵԼ», հնագույն առասպելաբան. վեպ հայ հին բանահյուսության մեջ: Հիմքում լույսն ու գարունը խորհրդանշող աստվածային աղեղնավորի՝ ***Հայկի*** պայքարն է խավարն ու ձմեռը մարմնավորող բռնակալ Բելի դեմ: Պահպանվել է ***Մովսես Խորենացու*** և ***Սեբեոսի*** երկերում:

ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, 1. ճիշտ, մաքուր գրաբար՝ զերծ օտարաբանությունից (հունաբանությունից, լատինաբանությունից), բարբառայնությունից (Աստվածաշնչի Սահակ-Մեսրոպյան թարգմ-յան, Ագաթանգեղոսի, Եզնիկի և ուր. երկերի լեզուն): 2. Առհասարակ ընտիր, մաքուր գր. հայ.՝ զերծ օտարաբանությունից (Մ. Մեծարենցի, Վ. Տերյանի լեզուն): 3. Հայեցի ճիշտ բառօգտագործում, արտահայտություն, ձև:

ՀԱՅԿԱԲԵՐԴ, **Հայկաշեն, Աստվածաշեն**, բերդ (այժմ՝ ավերակ) Մեծ Հայքի Վասպուրական նահգ-ի Հայոց ձոր գվո-ում՝ Աստվածաշեն գյուղավանի արմ. կողմի ժայռի գագաթին: Սար Աբաս Կատինայից Մովսես Խորենացու միջոցով մեզ հասած տեղեկության հիման վրա Ղուկաս ***Ինճիճյանը*** ենթադրում է, որ Հայկ նահապետը Բելի դեմ հաղթ. ճակատամարտից հետո այդ տեղում հիմնադրել է Հայք դաստակերտը, որի անունով էլ շրջակա տարածքը կոչվել է Հայոց ձոր:

ՀԱՅԿԱԶ ԱՐԱՄ (Չեքեմյան Արամ Արսենի, 1900–1986), գրող: 1924-ից՝ ԱՄՆ-ում: Հեղինակ է «Ցեղին ձայնը» (հ. 1, 2, 1949, 1954), «Կարօտ» (1971), «Երջանկութիւն» (1978) պատմվածքների ժող-ների, «Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը» (1957) պատմավեպերագր. երկի, «4 տարի Քյուրդիստանի լեռներուն մեջ» (1970) հուշագրության և այլ գործերի: Հրատարակվել են նաև «Արամ Հայկազ. Նամակներ» (2009), «Ապրող ծառ մը» (2012, պատմվածքների ընտրանի), «Արամ Հայկազ: Մոռացված էջեր» (հ. Ա–Է, 2010–16) երկերի ժող-ները:

ՀԱՅԿԱԶ Բ, **Հեզաս** (XVI դ-ի վերջ–XVII դ-ի 20-ական թթ.), զորավար, մելիք: Սյունիքի Քաշաթաղ գվո-ի տեր Մելիք Հախնազարի որդին և հաջորդը: 1590-ական թթ-ին, չենթարկվելով թուրք բռնակալներին, անցել է Իրան, 1603-ին մասնակցել շահ Աբբաս I-ի դեպի Ատրպատական և Հայաստան արշավանքին, վերահաստատվել հայրենի տիրույթներում (կենտրոնը՝ Խանածախ գ.): Ընդարձակել է իր իշխանության սահմանները՝ տիրելով նաև Փոքր Սյունիքի և Կապանի շրջաններին: 1610-ին, Հ. Բ-ի նախաձեռնությամբ և նյութ. օժանդակությամբ, Տաթևի մոտ հիմնադրվել է Սյունյաց Մեծ Անապատի դպրոցը:

«ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ», հայագիտ. տարեգիրք (1970–ից, Բեյրութ, 1975–76 և 1985–90-ին ընդհատվել է): ***Հայկազյան համալսարանի*** հայագիտ. ամբիոնի հրտ-յուն: Խմբ-ներ՝ Երվանդ ***Քաւունի***, Անդրանիկ վրդ. ***Կռանյան*** (1991-ից), պատ. խմբ.՝ Անդրանիկ ***Տագեայան*** (1993-ից):

ՀԱՅԿԱՋՅԱՆ Վիլյամ Ներսեսի (1907–1963), կինոռեժ.: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1963): 1938-ից՝ Երևանի կինոստուդիայի (1957-ից՝ Հայֆիլմ) ռեժ. («Ավետիք Իսահակյան», 1956, «Պռեմ Հայաստանի մասին», 1960, «Հայրենիքի գրկում», 1964, բոլորը՝ վավերագր.) ևն:

ՀԱՅԿԱԶՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ, հիմնադրվել է 1850-ական թթ-ին Հալեպում: 1876-ից կոչվել է Ներսեսյան, 1919-ից՝ Հայկազյան: Այժմ բարձրագույն նախակրթարան է: Առաջնորդվում է Սիրիայի պետ. ուս. ծրագրով: Ուսուցումն արաբ. է, հայ-ով ավանդվում են հայոց լեզու և կրոն:

ՀԱՅԿԱԶՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Լիբանանում պետ. ճանաչման արժանացած և Սփյուռքում գործող հայկ. միակ բուհը: Հիմնադրել են Մերձ. Արևելքի ավետարան. եկեղեցիների միությունը և Ամերիկայի հայ միսիոներ. ընկ-ը 1955-ին Բեյրութում՝ Ստեփան Մեխակյանի և Սթիվեն Փիլիպոսյանի նվիրատվությամբ: 1955–89-ին եղել է քոլեջ, 1990–96-ին՝ համալսարան. քոլեջ, 1996-ից՝ համալսարան: Ուսումնառությունն անգլ. է, հայկ. և արաբ. մշակույթներին վերաբերող առարկաները դասավանդվում են հայ. և արաբ.: Լույս է ընծայում «*Հայագիտական հանդէս*»-ը (1970-ից):

ՀԱՅԿԱԶՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ, հիմնադրվել է 1855-ին Փարիզի Գոնել արվարձանում՝ Ս. Թեոդորյանի, Ա. Գալֆայանի, Գ. Այվազովսկու նախաձեռնությամբ: Մինչև 1857-ը՝ Արլ. բազմալեզու ճեմարան: 1856-ին ունեցել է 2 դասարան, 1858-ին՝ 4: Սովորել են 10–15 տարեկան երեխաները: Հայագիտ. առարկաները դասավանդվել են հայ., մյուսները՝ ֆրանս.: Փակվել է 1859-ին՝ միջոցների սղության պատճառով:

ՀԱՅԿԱԶՈՒՆ (Նազարյան Գագիկ Ստեփանի, ծ. 1951), գուսան: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2010): Հիմնադրել է «Հայկազունք» անսամբլը (գեղ. ղեկ.): Գրել է 100-ից ավելի երգեր (10-ը՝ հայկ. բանակի քայլերգեր՝ «Հայեր, միացե՛ք», «Գետաշեն», «Հպա՛րտ գնացեք», «Մուսալեռ», «Վերականգնվի՛ր, Կիլիկիա՛», «Պիտի գնանք», «Մոնթե Մելքոնյան» ևն: ՀՀ ՄՆ ոսկե մեդալ:

ՀԱՅԿԱԶՈՒՆԻ Լևոն Սահակի (1917–1957), կրկեսի արտիստ: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1956): Հայկ. կրկեսի հիմնադիրներից: Հանդես է եկել 1938-ից, եղել է մոտովազքի 1-ին վարպետներից (մոտովազք ուղղաձիգ պատի վրայով, մեծ տարածությամբ և բարձր-յամբ ձգված ճոպանին): Զոհվել է ելույթի ժամանակ:

ՀԱՅԿԱԶՈՒՆԻ Պետրոս (1839–1927), մանկավարժ, հաս. գործիչ: *Բարեվարտակ ընկերության* (1869) հիմնադիրներից: Առաջնորդվել է Խ. Աբովյանի, Ս. Նազարյանի, Մ. Նալբանդյանի գաղափարներով: Կազմել է թվաբ. գործողությունների աղյուսակների գիրք:

ՀԱՅԿԱԶՈՒՆՆԵՐ, Հայկազունք, Հայկազարմք, Հայկազեանք, Հայք, հայ ժողդ-ի ինքնանվանումը: Ըստ հայ ժողդ-ի ծննդախոս. ավանդավեպի՝ Հայկ. լ-աշխարհի բնիկները, իրենց համարելով Հայկ նահապետ-աստվածության սերունդը, նրա անունով կոչվել են «Հ.», «հայեր»:

«ՀԱՅԿԱԶՈՒՆՔ», ազգ., հաս., քաղ., մշակութ. շաբաթաթերթ (1990–92-ին, Երևան): Հայկազունների մարմնամարզ. ազգ. միության հրտ-յուն: Խմբ.՝ Ռուզան *Ասպետյան*:

ՀԱՅԿԱԼ Մուհամմեդ Հուսեյն (1888–1956), եգիպտացի արաբագիր գրող, քաղ. գործիչ, հրապարակախոս: «Ջեյնաբ» (1914, 2-րդ հրտ.՝ 1929) վեպը դարձել է եգիպտ. մոդեռնիզմի մանիֆեստը: Հեղինակ է նաև «Մուհամմեդի կյանքը» (1929) կենսագր. աշխ-յան, նաև հուշերի:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՕԳԱՒԽ», «*Հայ ազգային տուն*» (անգլ.՝ "Armenian National Home"), դիվանագիտ. եզրույթ, որը շրջանառության մեջ են դրել դաշնակից տերությունները (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա ևն) 1921-ի *Լոնդոնի համաժողովում*, երբ պարզ է դարձել, որ նոր աշխարհաքաղ-յան պայմաններում 1920-ի *Սևրի հաշտության պայմանագրի*՝ Հայաստանին վերաբերող դրույթները ենթակա են վերանայման: «Հ. ա. օ.» անորոշ հասկացությունը գալիս էր փոխարինելու Սևրի պայմանագրով նախատեսված «հայկական ազատ և անկախ պետություն» հասկացությանը, որը նշանակում էր *Հայկական հարցի* վերջնական ձախողում, և իր տրամաբ. վախճանն ունեցավ Լոզանի պայմանագրում (տես *Լոզանի համաժողով 1922–23*):

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ», գր., պատմ., աշխարհագր., մանկավարժ. և կրոն. ամսագիր (1864–71, 1874–79, Թիֆլիս, ապա՝ Շուշի, Գանձակ, Բաքու, Երևան, 1864–65-ին՝ «Հայկական աշխարհի կոռնկ»): «*Կռունկ Հայոց աշխարհին*» ամսագրի շարունակությունն է: Խմբ-հրտ.՝ Խորեն *Մուրադեան*:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, գիտահաս. կազմ-յուն: Հիմնադրվել է 1935-ին Երևանում: 1947–95-ին գործել է ՀՀ ԳԱԱ կազմում (1995-ից՝ ինքնակառավարվող): Զբաղվում է գիտ., լուսավորչ., բնապահպան., քարտեզագր. գործունեությամբ: Ունի մարզային և քաղաք. մասնաճյուղեր: Հրապարակում է մենագրություններ, աշխարհագր. ատլասներ, ուս. քարտեզներ ևն: Նախագահներ՝ Ա. Եղիազարյան, Բ. Մարտիրոսյան, Արմեն Թախտաջյան, Կոստանտին Պաֆենհոլց, Սեդրակ Մկրտչյան, Անդրանիկ Բաղդասարյան, Լեմվել Վալեսյան:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ (ՀԱԷԿ), ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր ք-ում: Առաջին հերթի I բլոկը գործարկվել է 1976-ին, II-ը՝ 1979-ին: Էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրանքը 5 մլրդ *կՎտ.ժ* է, որը բավարարում է ՀՀ բնակչության սպառած էլեկտրաէներգիայի 40 %-ը: 1989–95-ին աշխատանքը դադարեցվել է բնապահպան. նկատառումներով, վերագործարկվել է 1995-ին՝ երկրում սկսված էներգետիկ ճգնաժամի պատճառով: 2003-ից ՀԱԷԿ-ը շահագործում է ռուս. «ԻՆՏԵՐ-ՌԱՈՒԵԷՍ» ՓԲԸ-ն: Նախատեսվում է նոր ՀԱԷԿ-ի կառուցում:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԱԳԱՇԱՐԺ, ծածանաձկների ընտանիքի արագաշարժ ձկան ենթատեսակ (Albunoides bipunctatus armeniensis): Տարածված է գրեթե բոլոր (բացառությամբ Սևանա լճի ավազանի) գետերում: Ապրում է արագահոս գետերի տեղամասերում՝ վտառներով: Երկ.՝ 7–8 (երբեմն՝ մինչև 12) *սմ*, կ. զ.՝ մինչև 35 *գ*: Արդ. նշանակություն չունի:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ», ՀՀ ՊՆ ռազմագիտ. եռամսյա հանդես (1995-ից, Երևան): Խմբ-ներ՝ Հայկ *Քոթանջյան*, Արկադի *Սարգսյան*, Դավիթ Չիլինգարյան (2005-ից): 2007-ից լույս է ընծայում «Աշխատանքային տետրեր» հավելվածը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՀԲԸՄ, անգլ.՝ Armenian General Benevolent Union, AGBU), բարեսիր. կազմ-յուն: Հիմնադրվել է 1906-ին Կահիրեում՝ *Պողոս Նուբարի* և մի շարք եգիպտահայ ազգ. գործիչների նախաձեռնությամբ: Մեծ եղեռնի և հետագա տարիներին հիմնականում գբաղվել է որբախնամ և գաղթախնամ գործունեությամբ: 1930-ական թթ-ից հետո ՀԲԸՄ-ի հիմն. նպատակը կրթ., մշակութ., բարեսիր. ծրագրերով Սփյուռքում հայոց լեզուն և հայ ինքնությունն ու ժառանգությունը պահպանելն ու տարածելն է:

ՀԲԸՄ միակ սփյուռքահայ կազմ-յունն է, որին ՀԽՍՀ իշխանությունը թույլատրել է գործել երկրում. 1924-ից սկսած՝ կառուցել են որբանոցներ, գյուղեր, մայրանոց, ակնաբուժարան, Նուբարաշենն ավանը, հրատարակել գիտ. աշխ-ներ, աջակցել 1920–30-ական թթ-ի և 1946–47-ի ներգաղթին: 1988-ի երկրաշարժից հետո կազմակերպել է հումանիտար օգնության առաքում աղետյալ գոտի: 1990-ին Երևանում բացվել է ՀԲԸՄ գրասենյակը: Մարդասիր. օգնությանը զուգահեռ իրականացրել է ՀՀ-ի զարգացմանը նպաստող ծավալուն ծրագրեր, կառուցել է սառցամթերանոց, պլաստիկ վիրաբուժության կենտրոն, Գերձայն. հետազոտության բժշկ. կենտրոնը, Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, *Վազգենյան հոգևոր դպրանոցը*, հիմնադրել է *Հայաստանի Ամերիկյան համալսարանը*, *հայորդաց տներ* ևն (1988–2015-ին՝ ավելի քան 70 մլն դոլար ընդհ. արժողությամբ): ՀԲԸՄ պաշտոնաթերթերն են «*Յուշարար-Միութիւն*» և «*Էյհիհիյու*» հանդեսները, հրատարակում է նաև շուրջ 1 տասնյակ այլ պարբ-ներ: 1940-ից ՀԲԸՄ վարչ. կենտրոնը Նյու Յորքում է: Ներկայում ՀԲԸՄ մասնաճյուղեր են գործում 20 երկրի 80 քաղաքներում: Նախագահներ՝ Պողոս Նուբար, Գալուստ *Կյուլպենկյան*, Զարեհ Նուբար, Արշակ Կարագյոզյան, Ալեք *Մանուկյան*, Լուիզ *Մանուկյան-Սիմոն*, Պերճ *Մեդրակյան* (2002-ից):

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ 1912–14, Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի հիման վրա (տես *Բեռլինի վեհաժողով 1878*) Օսմ. կայսրության հայաբնակ վայրերում բարենորոգումներ իրականացնելու նպատակով ռուս. դիվանագիտ. և հայ հաս. շրջանների համատեղ ջանքերով պատրաստված միջոցառումների ծրագիր, որը 1912–13-ի Բալկան. պատերազմների հաջող ավարտից հետո պայմաններ կստեղծեր Հայկ. հարցի վերարծարծման համար: Ռուսաստանը կարողացել է պարտադրել Թուրքիային համաձայնագիր կնքել հայկ. բարենորոգումների վերաբերյալ (տես *Ռուս-թուրքական համաձայնագիր 1914*):

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՇԵՐԱԶՂԱՓԻԿ (Myotis hayastanicus), **Սևանի գիշերաչղջիկ**, հարթաքիթ չղջիկների ընտանիքի կաթնասուն կենդանի: ՀՀ-ում հայտնաբերվել է 2001-ին Գեղարքունիքի մարզում (Արեգունի, Սևանի լ-շղթաների ստորոտին): Փոքր չափերի չղջիկ է: Ունի տարածման սահմանափակ արեալ: ՀՀ բնաշխարհիկ է:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՐ, հայոց գիր, մաշտոցյան գիր, հայկ. ինչյուն. գրանշանների համակարգ. ստեղծել է *Մեսրոպ Մաշտոցը*՝ *Սահակ Պարթևի* աջակցությամբ (405): Տարբերում են Հ. գ-ի *գրչագիր*, *երկաթագիր*, *բոլորգիր*, *շղագիր*, *նոտրգիր* տեսակները: Մաշտոցյան այբուբենի բո-

լոր տառերը վերից վար իջնող ուղղաձիգ երկար, կարճ և լայն, նաև հորիզոն. նուրբ գծերով են: Մեսրոպ Մաշտոցը նրանց տվել է անուններ, որոշել ինչյուն. արժեքները և դասավորել 4 շարքով՝ ըստ թվային արժեքների (միավորներ, տասնավորներ, հարյուրավորներ, հազարավորներ): Մաշտոցյան այբուբենն ունի 36 տառ: XII դ–ի վերջերին ավելացել են **օ** և **ֆ**, XX դ–ում՝ **և** տառերը: Ժամանակակից հայ–ն ունի 39 տառ:

Մեծատառ	Փոքրատառ	Անուն
Ա	ա	այբ
Բ	բ	բեն
Գ	գ	գիմ
Դ	դ	դա
Ե	ե	եչ
Զ	զ	զա
Է	է	է
Ը	ը	ըթ
Թ	թ	թո
Ժ	ժ	ժե
Ի	ի	ինի
Լ	լ	լյուն
Խ	խ	խե
Ծ	ծ	ծա
Կ	կ	կեն
Հ	հ	հո
Ձ	ձ	ձա
Ղ	ղ	ղատ
Ճ	ճ	ճե
Մ	մ	մեն
Յ	յ	հի
Ն	ն	նու
Շ	շ	շա
Ո	ո	վո
Չ	չ	չա
Պ	պ	պե
Ջ	ջ	ջե
Ռ	ռ	ռա
Ս	ս	սե
Վ	վ	վեվ
Տ	տ	տյուն
Ր	ր	րե
Ց	ց	ցո
ՈՒ	ու	հյուն
Փ	փ	փյուր
Ք	ք	քե
Օ	օ	օ
Ֆ	ֆ	ֆե

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ, Ռուսաստանի հայ բնակչության շրջանում և Հայաստանում խորհրդ. իշխանության ու նրա ազգ. քաղ–յան սկզբունքները քարոզելու նպատակով ՌԽՖՍՀ Ազգությունների ժողկոմատին առընթեր ստեղծված մարմին: Հիմնադրվել է 1917–ին: Ժողկոմ՝ Վ.առլամ *Ամանեաով*, տեղակալ՝ Վահան *Տերյան*: Գործուն մասնակցություն է ունեցել *«Թուրքահայաստանի մասին»* դեկրետի մշակմանը: Հայաստանում խորհրդ. իշխանություն հաստատվելուց հետո դադարել է գործելուց (1921–ի մարտի 5–ին):

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ, հիմնադրվել է 1994–ին Երևանում՝ ՀՀ խոշոր գրադարանների և ՄՆ–յան նախաձեռնությամբ (մինչև 2004–ը՝ Հայկ. գրադարան. միություն): Կազմակերպում է գրադարան. գործի զարգացմանը, արդիական տեղեկատվությանը նվիրված գիտաժողովներ, խորհրդակցություններ, սեմինարներ: Լույս է ընծայում «Հայկական գրադարան» տարեգիրքը (սկզբում՝ «Տեղեկագիրք»):

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ–ԹԱՆԳԱՐԱՆ Ամերիկայի, հիմնադրվել է 1980–ին Ուոթերթաունում (ԱՄՆ): 2013–ից՝ Ամերիկայի հայկ. թանգարան: Պահվում են հայ. և օտար լեզուներով գրքեր, հայկ. հին գործեր, սափորներ, հայ նկարիչների գործեր:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ԵՐԳԻ ԱՆՍԱՄԲԼ Սայաթ–Նովայի անվան (1943–ից), 1946–ից՝ վաստ.: Հիմնադրվել է 1938–ին Երևանում՝ ՀԽՍՀ ռադիոկոմիտեի ժող. գործիքների անսամբլի հիման վրա (ղեկ.՝ Շարա *Տալյան*, 1942–1972–ին՝ Վաղարշակ *Սահակյան*): Երկացանկում՝ հայ աշուղների, գուսանների և հայ կոմպոզիտորների, տարբեր ժողդ–ների ժող. երգեր, նաև երգախառն հեքիաթներ (գուսան Աշոտի «Աստղատուր և Աստղանուշ», ևն): Գործել է մինչև 1972–ը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂԻՆ ՄԵԳՈՒՆ, գորշ մեղուների հայկ. ցեղ: Ունեն զարգացած հոտառություն, արագ աճում և բազմանում են: Երևանի *«Նեկտար»* մեղվաբուծ. ԳՀ պետ. ձեռն–յան (Մեղրի) հենակետում զբաղվում են Հ. դ. մ–ի պահպանման և տոհմային աշխ–ներով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻՈՆՆԵՐ, հայկ. ազգ. զորամիավորումներ խորհրդ. բանակի կազմում. 1. **76–րդ հայկ. լեռնահրաձգ. դիվիզիա (1922–45)**, 2. **390–րդ հայկ. հրաձգ. դիվիզիա (1942 հունվար–մայիս)**, հրամ.՝ Սիմոն *Զաքյան*: 3. **408–րդ հայկ. հրաձգ. դիվիզիա (1941–42)**, 4. **409–րդ հայկ. հրաձգ. դիվիզիա (1942–45)**, ստացել է Բրատիսլավյան պատվանունը, պարգևատրվել «Բոգդան Խմելնիցկի» շքանշանով, 5. **89–րդ հայկ. հրաձգ. դիվիզիա (Թամանյան, 1941–56)**, հրամ–ներ՝ Ս. Զաքյան, Ա. Սարգսյան, Ա. Վասիլյան, Ն. Սաֆարյան: Կարմիր դրոշի, Կուտուզովի 2–րդ աստիճանի շքանշաններ: 6. **261–րդ հայկ. հրաձգ. դիվիզիա (1942–45)**: Բոլորը մասնակցել են ՀՄՊ–ին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԷՅՐԵՆԻՍ, կետագծավոր էյրենիս (Eirenis punctatolinealis), լորտունների ընտանիքի **նույն ենթաընտանիքի Eirenis** ցեղի օձ: ՀՀ–ում հանդիպում է ոչ շատ բարձր լեռներում և Երևանի շրջակայքում: Ունի գլխավորապես փորող կենսակերպ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԷՍԿԱԴՐՈՆ (ռուս. աղբյուրներում՝ Армянский шквадрон, Эскадрон), հայ մարտիկներից կազմված հեծյալ ստորաբաժանում ռուս. բանակում: Ստեղծվել է 1723–ին՝ հայերի նախաձեռնությամբ ու միջոցներով՝ 1722–ին ձևավորված հայկ. 3 ջոկատի («Հեծյալ ջոկատ», «Էսկադրոն», «Հետախուզական խումբ») միավորումով: 1722–35–ին մասնակցել է Կասպից ծովի ավազանում և Կովկաս. լեռներում ռուս. զորքերի մղած բոլոր մարտերին, 1735–39–ի ռուս–թուրք. և 1741–43–ի ռուս–շվեդ. պատերազմներին: Կազմալուծվել է Եկատերինա II կայսրուհու՝ 1764–ի մայիսի 10–ի հրամանագրով:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԷՍՊԵՐԱՆՏԻՍՏ» (“Armena esperanticto”), գր., մշակութ., ուս. ամսաթերթ (1958, Երևան՝ հայ. և էսպերանտո լեզվով): ԵՊՀ–ին առընթեր հայկ. էսպերանտո. կազմ–յան հրտ–յուն: Խմբ.՝ Գուրգեն Սևակ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, **Հայոց մեծ թվական**, օգտագործվել է հայ մատենագրության մեջ և վիմագիր արձանագրություններում: Հաշվարկման սկիզբը մ. թ. 551–ն է, ընդունվել է 584–ին՝ *Մովսես Բ Եղիվարդեցի* կաթողիկոսի օրոք: Նշանակվում է հայոց այբուբենի տառերով, օր.՝ ՌՃԿԹ՝ 1169, ՌՄՀԴ՝ 1264, ևն: Հ. թ–յան տարեթիվը գրիգորյան տոմարի վերածելու համար նրան պետք է գումարել 551 (մինչև 1320–ը) կամ 550 (1320–ից հետո):

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ», հաս–քաղ. օրաթերթ (1999–ից, Երևան): Խմբ–ներ՝ Նիկոլ *Փաշինյան*, Աննա Հակոբյան (2012–ից):

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՅՌԱՅԻՆ ՄՈՂԵՍ (Darevskia armeniaca), *իսկական մողեսների* ընտանիքի Դարևսկի ցեղի մողես: Կուսածին է: ՀՀ–ում հանդիպում է Տավուշի, Լոռու, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում: Ապրում է ժայռ. և խիստ քարքարոտ, նաև նոսրանտառ. բուսականությամբ ցածր լեռն. վայրերում, շինությունների պատերի ճեղքերում:

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ (ՀԺՇ), քաղ. շարժում: Ձևավորվել է Սփյուռքում 1981–ին, թեև սկզբնավորվել էր 1970–ական թթ–ի կեսին: Հանդես է եկել որպես *Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի* քաղ. ուղուն համակիր շարժում: Նպատակը Սփյուռքում (մասնավորապես՝ Մերձ. և Միջին Արևելքի երկրներում) հայ. ժող. զանգվածներին պայքարի նախապատրաստելն էր Թուրքիայի բռնագրաված հայկ. հողերի ազատագրման համար: ՀԺՇ 1–ին կենտրոնը Բեյրութում էր 1981–ին: Հունաստանում, Լիբանանում, Իրանում, Հնդկաստանում և այլուր տարբեր տարիների հրատարակել է «Վան» (ֆրանս.), «Մուշ» (անգլ.), «Հայ ֆետայի» (հուն.), «Կարին» (թուրք.) և այլ պարբ–ներ, Կենտր. խորհրդի «Ժողովրդային պայքար» պաշտոնաթերթերը (Աթենք), 2001–04–ին Երևանում՝ «Վասն հայության» շաբաթաթերթը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆ, 1. տես *Արևելյան լեգեոն*: 2. ԵՀՊ–ի տարիներին Կարմիր բանակից գերեվարված հայերից կազմավորված 812–րդ հայկ. զորամիավորումը գերմ. բանակում (ընդհ. հրամ.՝ Դրաստամատ *Կանայան*), որի նպատակը ԽՍՀՄ–ից անկախ Հայաստանի Հանրապետության վերականգնումն էր՝ ֆաշիստ. Գերմանիայի հաղթանակից հետո:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ, Հայկական բարձրավանդակ, տարածվում է Հվ. Կովկասի ու Վերին (Հայոց) Միջագետքի հարթավայրերի, Սև ծովի, Փոքրասիական ու Իրան. բարձրավանդակների միջև (ծայրակետերը՝ հս–ում՝ հս. լայն. 42°10′, հվ–ում՝ հս. լայն. 37°20′, արմ–ում՝ արլ. երկայն. 36°45′, արլ–ում՝ արլ. երկայն. 48°): Ալպիմալայան երիտասարդ ծալքավոր լեռն. համակարգի կենտր. օղակն է: Տարածքը՝ մոտ 400 հզ. *կմ²*, միջին բարձր.՝ 1800 *մ*, առլզն՝ 5165 *մ* (Մեծ Մասիս լ.): Հարակից Փոքրասիական և Իրան. բարձրավանդակներից բարձր է 800 *մ*–ով և Առաջավոր Ասիայի տարածքում առանձնանում է որպես բարձրադիր «լեռնային կղզի»: Հ. լ. սեյսմիկ գոտի է: 1926–ին տեղի է ունեցել Լենինականի, 1988–ի դեկտ–ի 7–ին՝ Սպիտակի երկրաշարժը: Տարածքում են ՀՀ–ն, ԼՂՀ–ն, Ադրբեջանը, Գարդմանը և Նախիջևանը, Վրաստանը, ԻԻՀ–ն: Տարածքի մոտ 2/3–ը Թուրքիայի կազմում է: Տես նաև *Արևելապոնտական լեռներ, Հայկական Տավրոս, Փոքր Կովկաս*:

Հ. լ. քաղաքակրթության ինագույն օրրաններից է. դեռևս վաղ ժամանակնե–

րից այստեղ բնակվել են տարբեր ցեղեր, որոնցից ձևավորվել է հայ ժողդ–ը և ընթացքում կերտել իր հազարամյա պատմությունը: ՀՀ և ԼՂՀ տարածքները միասին կազմում են Հ. լ–ի տարածքի 11 %–ը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՏՓԱՍՏԱՆԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԳԼՈՒԽ ԻԺ, *Էրիվանյան իժ* (Vipera erivanensis), ***տափաստանային իժ***, իժերի ընտանիքի օձ: ՀՀ–ում հանդիպում է բարձրլեռն. գոտիներում: Ապրում է համեմատաբար ցուրտ ու խոնավ տափաստան., խոնավասեր, նոսրանտառ. բուսականությամբ քարքարոտ կենսավայրերում:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ», գիտ. խմբագրություն: Հիմնադրվել է 1932–ին Երևանում՝ նույնանուն բազմահատոր հանրագիտարան հրատարակելու նպատակով: Գլխ. խմբ.՝ Դրաստամատ *Տեր–Միմոնյան*: 1935–ին լույս է տեսել միայն 1–ին հատորի 1–ին պրակը: Կազմացրվել է 1937–ին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՀԽՍՀ), ԽՍՀՄ *միութենական հանրապետություններից*: Հիմնադրվել է 1920–ի դեկտ. 2–ին Հայաստանի Հանրապետության և ՌԽՖՍՀ միջև ստորագրված համաձայնագրով: Մինչ այդ՝ նոյեմբ. 29–ին, Հայաստանի ռազմեհեղկոմը, անցնելով հայադրր. սահմանը, մտել էր Քարվանսարա (այժմ՝ Իջևան) և Հայաստանը հռչակել խորհրդ. հանրապետություն: 1922–ի մարտին մտել է Անդրկովկաս. դաշնության կազմի մեջ, դեկտ–ին՝ նրա կազմում, իսկ 1936–ից՝ անմիջականորեն ԽՍՀՄ կազմի մեջ: ՀԽՍՀ պատմության զարգացումն անխզելիորեն կապված է ԽՍՀՄ պատմության հետ. մասնակցել է տնտ–յան վերականգնման համար իրականացված բոլոր միջոցառումներին, հայ ժողդ–ը ԽՍՀՄ ժողդ–ների հետ մասնակցել է ՀՄՊ–ին, կռվել ֆաշիստ. Գերմանիայի դեմ:

1990–ի օգոստ. 23–ին ՀԽՍՀ ԳԽ–ն ընդունել է հռչակագիր Հայաստանի անկախության մասին, որի համաձայն՝ ՀԽՍՀ վերակազմավորվել է *Հայաստանի Հանրապետության*: 1991–ի սեպտ. 21–ին Հայաստանում տեղի ունեցած համաժող. հանրաքվեով (94,4 %–ը՝ կողմ) դուրս է եկել ԽՍՀՄ կազմից: 2 օր անց հանրապետության ԳԽ–ն ՀՀ–ն հռչակել է անկախ պետություն:

ՀԽՍՀ–ն ուներ տնտ. և սոցիալ. զարգացած համակարգ: Ծաղկել են գիտ–յունը, արվ–ը և մշակույթը, հիմնադրվել են գիտամշակութ. և ուս. բազմաթիվ հաստատություններ (բացառապես՝ անվճար), ձևավորվել է զարգացած գրահրատարակչ. ոլորտ. տպագրվել են բազմաթիվ արժեքավոր գրքեր, այդ թվում՝ «Հայ ժողովրդի պատմություն» և «Հայկական սովետական հանրագիտարան» բազմահատոր կոթողային հրտ–յունները:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՏԱԿՆԵՐ, ստեղծվել են 1826–28–ի ռուս–պարսկ. պատերազմի ժամանակ Թիֆլիսում՝ *Ներսես Ե Աշտարակեցու* և Հարություն *Ալամդարյանի* նախաձեռնությամբ՝ ռուս. բանակի Կովկաս. կորպուսի ռազմ. գործողություններին աջակցելու նպատակով: 1827–ին Հ. կ. գ. մասնակցել են *Օշականի ճակատամարտին*, Սարդարապատի, Երևանի բերդերի ազատագրմանը, Ատրպատականի մարտերին, նաև 1828–29–ի ռուս–թուրք. պատերազմին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ 1914–18, ԱՀՊ–ի ժամանակ Կովկաս. ռազմաճակատում գործող ռուս. բանակը համալրելու և Արմ. Հայաստանը թուրք. լծից ազատագրելու նպատակով սկսված հայրենասիր. շարժում: Ձևավորվել են 7 կամավոր. ջոկատներ՝ Անդրանիկի, Դրաստամատ Կանայանի, Համազասպի, Քեռու, Գրիգոր Ավշարյանի, Հովսեփ Արղությանի հրամանատարությամբ: 1915–ի վերջին կամավորների ընդհ. թիվը հասել է մոտ 10 հզ–ի: 1915–ի դեկտ–ին կամավոր. ջոկատները ցրվել են, և դրանց հիման վրա ռուս. զորամասերի կազմում ստեղծվել են հայկ. հրաձգ. գումարտակներ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՊՈՒՏՑ, *հայկական լազուր*, Հայաստանում գործածված կապույտ ներկերի հավաք. անվանումը: Հաճախ նույնացվել է թանկարժեք կապույտ լաջվարդ ներկին, որի հիմքը կազմել է լաջվարդ կիսաթանկագին քարից Հայաստանում ստացված փոշենման լեղակը: Կիրառվել է գեղանկարչության, հատկապես՝ մանրանկարչության մեջ, ինչպես նաև գործվածքներ ներկելու համար:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՎ, *հայկավ* (հուն.՝ բոլոս Արմենիա, լատ.՝ բոլուս Արմենիուս, արաբ.՝ տին Էրմանի, թուրք.՝ քիլ Էրմենի ևն), մուգ կարմիր կամ դեղին կավաքար, որն օգտագործվել է որպես վերքերը չորացնող, արյունահոսությունը դադարեցնող, լեղամուղ բուժամիջոց: Արդյունահանվել է Հայաստանում (Անիի և Իջևանի շրջակայքում) և Պարսկաստանում, արտահանվել տարբեր երկրներ, ավելի ուշ՝ նաև Իտալիա և Ֆրանսիա. պատրաստվել են դեղահաբեր սուսանակ (գոնոռեա) հիվանդության դեմ: Հ. կ. առաջինը հիշատակել է բժշկապետ Դիոսկորիդեսը (I դ.): Հ. կ–ի՝ որպես ոսկրախտի բուժման, լեղամուղ միջոցների և հակաթույնի մասին հիշատակություններ կան Մխիթար Հերացու և Ամիրդովլաթ Ամասիացու աշխ–ներում:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ՀԿԽԸ), բարեսիր. կազմ–յուն: Հիմնադրվել է 1920–ին Երևանում՝ ՀՅԴ Կարմիր խաչի (հիմն.՝ 1910) և Պետ. կարմիր խաչի (1919) միավորումով: 1922–ից՝ ինքնուրույն ազգ. կազմ–յուն: Բաժանմունքներ է ստեղծել ՀԽՍՀ քաղաքներում, օգնել հայ գաղթականներին, 1926–ի Գյումրիի և 1931–ի Զանգեզուրի երկրաշարժերից տուժածներին: ԵՀՊ–ի տարիներին ՀԿԽԸ 54 կազմ–յուններ գործել են Հայաստանի 20 հոսպիտալներում, կազմակերպել է նաև բուժքույր. դասընթացներ:

1988–ի Սպիտակի երկրաշարժից հետո ստեղծել է աղետյալներին օգնող շտաբներ, «Որոնում» ծառայությունը, համագործակցել միջազգ. Կարմիր խաչի (ԿԽ) և Կարմիր մահիկի (ԿՄ) հետ: 1991–94–ին զբաղվել է Ադրբեջանից բռնագաղթած հայերի հարցերով: 1992–ից ՀԿԽԸ ՀՀ–ում գործող միջազգ. ԿԽ–ի միակ ազգ. ընկ–ն է: 1993–ից անդամակցում է միջազգ. ԿԽ–ի 1949–ի ժնևի համաձայնագրին, 1995–ից ԿԽ/ԿՄ միջազգ. դաշնության անդամ է: ՀԿԽԸ ՀՀ–ում ունի 11 մարզային, 3 տարածք. և 52 համայնք. մասնաճյուղեր, 1992–ին հիմնադրվել է ՀՀ ԿԽ–ի վերականգնող. կենտրոնը: 1992–ից գործում է նաև ՀԿԽԸ–ի Երիտասարդ. ԿԽ–ն, որը 2005–ից միջազգ. ԿԽ–ի Երիտասարդ. հանձնաժողովի անդամ է:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄՐԱԿՆ (Rutilus rutilus schelkovnikovi), ծածանաձկների ընտանիքի ձուկ: Արարատյան դաշտի բնաշխարհիկ տեսակներից է: Հանդիպում է հիմնականում Մեծամոր գետում, նրան հարող ջրանցքներում և Հրազդան գետի ստորին հոսանքում:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՍԱԿՈՊՏԱԲՈՒԲԴ ՈՉԽԱՐԻ ՅԵՂ, մսաբրդակաթնատու կիսակոպտաբուրդ, ճարպապոչավոր ոչխարներ: Ստացվել է 1931–84–ին (Աշոտ Ռուխկյան և ուր.) կոպտաբուրդ բալբաս և նրբագեղմ ու կիսանրբագեղմ ոչխարների տրամախաչումից: Խոյերի կ. գ.՝ 80–90, մաքիներինը՝ 50–96 *կգ*, բրդատվությունը, համապատասխանաբար՝ 4,6–5,5 և 2,3–3,2 *կգ*: Կաթնատվությունը՝ 110–120 *կգ*:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐ 1894–96, հայերի զանգված. ջարդեր Արմ. Հայաստանում և Օսմ. կայսրության հայաբնակ վայրերում: Կազմակերպել և իրագործել է սուլթան *Աբդուլ Համիդ II*–ի կառ–յուն՝ արևմտահայերի ազատագր. շարժումը ճնշելու և *Հայկական հարցին* վերջ տալու նպատակով: Կոտորվել է 300 հզ. հայ, 100 հզ. բռնի մահմեդականացվել են, 100 հզ. տարագրվել տարբեր երկրներ, ամայացել են Արմ. Հայաստանի և Օսմ. կայսրության հայաբնակ բազմաթիվ վայրեր, սաստկացել է հայ ժողդ–ի ազգ. և տնտ. ճնշումը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՐՊՈՒՍ, *Հայոց ազգային կորպուս*, զինվ. միավորում ռուս. բանակի կազմում: Ստեղծվել է 1917–ի դեկտ–ին (հրամ.՝ գեն. Թովմաս *Նազարբեկյան*, հատուկ կոմիսար՝ Դրաստամատ *Կանայան*), Հայկ. ազգ. զորամիավորումների միավորումով ձևավորվել է 1917–ի ապրիլից: 1918–ի մարտի 31–ի տվյալներով՝ Հ. կ. ունեցել է 19 590 մարտիկ, որոնցից 818–ը՝ սպա: 1918–ի հուլիսի 26–ին Հ. կ. վերակազմավորվել է Ազգ. դիվիզիայի, որի հիման վրա էլ 1920–ին ստեղծվել է ՀԽՍՀ Կարմիր բանակը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԿԵՍԱՅԻՆ ՍՏՈՒԴԻԱ Լեռնիդ Ենգիբարյանի անվան, հիմնադրվել է 1972–ին Երևանի Ս. Շահումյանի շրջանի պիոներների և դպրոցականների պալատում (այժմ՝ *Հայորդաց փոսն*), 1997–ից՝ Երևանի պետ. կրկեսին կից (գեղ. ղեկ.՝ Սոս *Պետրոսյան*): Ստուդիայում գործում են ակրոբատիկայի, օդ. մարմնամարզության, ձեռնածության, լարախաղացության, ամպաարարության, ծաղրածուության և այլ բաժիններ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԿԵՍԻ ԿՈԼԵԿՏԻՎ (ՀԿԿ), կազմակերպվել է 1956–ին՝ Վաղարշակ *Արզումանյանի* ղեկավարությամբ: Կազմում՝ Վ. Արզումանյան (էքվիլիբրիստ), Լևոն *Հայկազունի* (մոտոատրակցիոնիստ), Նազի Շիրայ (ժոնգլյոր), Ստեփան *Իսահակյան* (կենդանավարժ), Մ. և Ռ. Հակոբյաններ (օդ. մարմնամարզիկներ), Շ. Գևորգյան (շնիկներ վարժեցնող), Վ. Մելիքջանյան (ծաղրածու), Լեռնիդ Ենգիբարյան (մսջկատակ և ծաղրածու), Սոս *Պետրոսյան* (ձեռնածու, 1985–ից՝ ՀԿԿ գլխ. ռեժ., 2003–ից՝ նաև տնօրեն) և ուր.: 1961–ից ՀԿԿ կոչվել է «Երևան» (նույն թ–ին արժանացել է վաստակավորի կոչման), 1974–ից՝ «Էրեբունի», 2006–ից՝ «Երևանյան կրկես» մշակութ. կենտրոն:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ (Armenian Assembly of America), համահայկ. կազմ–յուն ԱՄՆ–ում: Հիմնադրվել է 1972–ին: Հիմնադիրներ՝ Ստեփան Մուգար, Հրայր Հովնանյան, Լիոնել

Գալստյան, Ռոբերտ–Արամ Գալուստյան, Հայկ Տեր–Մանուելյան, Զոն Հովհաննեսյան Կրտսեր, Հայկազ Գրիգորյան, Ռիչարդ Հովհաննիսյան: Կենտրոնը՝ Վաշինգտոնում, գրասենյակներ ունի Լոս Անջելեսում և Երևանում: Նպատակը արևմտահայերին համախմբելն է, ԱՄՆ–ում հայկ. մշակութ. ավանդույթները պահպանելը, հայոց մասին ճշմարիտ տեղեկություններ տարածելը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ (1947), գումարվել է ապրիլի 30–մայիսի 4–ը Նյու Յորքում՝ *Ամերիկահայ ազգային խորհրդի* նախաձեռնությամբ: Նպատակը ԵՀՊ–ից հետո ստեղծված պայմաններում Թուրքիայի գրաված հայկ. տարածքների վերադարձման հարցն արծարծելն էր՝ կապված հայերի ներգաղթի կազմակերպման հետ: Մասնակցել է 715 պատգմ.՝ 22 երկրից: Հ. հ. վ–ին հեռագրով ողջունել են ՀԽՍՀ Կառ–յունն ու կաթողիկոս *Գևորգ Զ Չորեքչյանը*: Որոշումը հուշագրով ներկայացվել է ԱՄՆ պետ. քարտուղարի տեղակալ Դ. Աչեսոնին և ՄԱԿ–ի քարտուղարությանը, սակայն մնացել է անհետևանք:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ», հայագիտ. բնույթի համառոտ հանրագիտարան 4 հատորով (h. 1–4, 1990–2003, «Հայկական հանրագիտարան. հրատարակչություն»): Գլխ. խմբ–ներ՝ Կոստանդին Խուդավերդյան, Հովհաննես Այվազյան:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ», ստեղծվել է 1966–ին Երևանում՝ որպես ՀԽՍՀ ԳԱ նախագահության առընթեր առանձին գիտախմբագր. հաստատություն: Սկզբում՝ Հայկ. հանրագիտարանի և տեղեկատու գիտ. գրկ–յան գլխ. խմբագրություն: Մինչև 2002–ը՝ Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրություն: Գործել է Հրատպետկոմի համակարգում, 2003–ից ՀՀ ԳԱԱ կազմում է: Հրատարակում է հանրագիտ. բնույթի գրկ. (համապարփակ, ճյուղային, մասնագիտ., մանկ. ևն): Հիմնարար հրտ–յունը *«Հայկական սովետական հանրագիտարանն»* է (h. 12 + 1, 1974–87), որին հաջորդել են «Հայկական համառոտ հանրագիտարանը» (h. 1–4, 1990–2003) և մի շարք թեմատիկ ու ճյուղային հանրագիտարաններ:

Գլխ. խմբ–ներ՝ Վիկտոր *Համբարձումյան*, Աբել *Սիմոնյան*, Մակիչ *Արզումանյան*, Կոստանդին *Խուդավերդյան*, Հովհաննես *Այվազյան* (1999–ից):

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ, թուրք. լծից Արմ. Հայաստանի ազատագրման, հայ ժողդ–ի ինքնորոշման ու սեփ. պետականության վերականգնման համար մղած պայքարի անվանումը միջազգ. դիվանագիտ–յան պատմության մեջ: Ասպարեզ է իջել որպես *Արևելյան հարցի* բաղկացուցիչ մաս՝ 1877–78–ի ռուս–թուրք. պատերազմից հետո (տես *Բեռլինի վեհաժողով 1878*, *Սան Ստեֆանոյի պայմանագիր 1878*): Հ. հ. քննարկվել է *Փարիզի հաշտության համաժողովում* (1919–20) (տես նաև *Սևրի հաշտության պայմանագիր 1920*), *Լոզանի խորհրդաժողովում* (1922–23), *Պոտսդամի համաժողովում* (1945): 1983–ից Հ. հ. քննարկվում է նաև ԵԽ–ում, որը 1987–ի հունիսի 18–ին ընդունել է «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևը: Ժամանակակից պայմաններում Հ. հ. ընկալվում է որպես ամբողջ աշխարհի հայության ձգտումը՝ վերականգնելու պատմ. արդարությունը, ստեղծելու իրական պայմաններ Հայաստանի միավորման համար:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ» ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ, թեմատիկ հանրագիտարան՝ Հայկ. հարցի և Հայոց ցեղասպանության մասին (ռուս.՝ 1990, հայ.՝ 1996, «Հայկական հանրագիտարան. հրատարակչություն»): Գլխ. խմբ.՝ Կոստանդին *Խուդավերդյան*:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, բացվել է 1943–ին Երևանում՝ ՀՊՄԻ–ի հեռակա բաժնի հիման վրա: 1969–ին փակվել է, և նրա հիման վրա ստեղծվել է Կիրովականի մանկավարժ. ինստ–ը, այժմ՝ *Վանաձորի պետական մանկավարժական համալսարան*:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱԲԽԱՅԻՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ, Հայկ. լ–աշխարհի կենտր. մասը: Տարածքը՝ 100 հզ. *կմ*²: Բնորոշ են 3500–4000 *մ* բարձր–յան լ–զանգվածները (Արսիանի, Բյուրակնի, Զավախքի, Արուլ–Սամսարի, Ծաղկանց, Արագածի, Գեղամա, Վարդենիսի, Սյունիքի ևն), բազմաթիվ հրաբխ. կոները (Մասիս, Արագած, Նեմրութ, Արայի լ., Ծղուկ ևն): Կան խոշոր սարահարթեր:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԹԵՐ, մամորթատու, միջին բրդատվության ճագարների բնաշխարհիկ ցեղ: Ստացվել է բարդ վերարտադրող. տրամախաչման միջոցով: Իրանի միջին երկ.՝ 50,5 *սմ*, կրծքի փաթը՝ 39,4 *սմ*, միջին կ. զ.՝ 4–5 *կգ*: Սորթուց կարում են բարձրորակ մուշտակ, կիսամուշտակ ևն:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԶ, վարչ. միավոր Ռուս. կայսրության կազմում 1828–40–ին: Ստեղծվել է Նիկոլայ I ցարի՝ 1828–ի մարտի 21–ի հրամանագրով՝ *Թուրքմենչայի պայմանագրի* վավերացումից (10.02.1828) հետո: Հ. մ–ի մեջ մտել են Արլ. Հայաստանի որոշ տարածքներ՝ Երևանի և Նախիջևանի նախկին խանությունները և Օրդուբադի գվո–ը, որոնք Ռուսաստանը նվաճել էր 1826–28–ի ռուս–պարսկ. պատերազմի ժամանակ: Կենտրոնը՝ Երևան ք.: 1830–38–ին Հ. մ–ի պետ է եղել իշխան, գեն. Բարսեղ *Բեհբութովը*:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԿՆԻԿ (Sicista armenica), մկնանմանների ընտանիքի մկնիկներ ցեղի կրծող կենդանի: Սարմնի երկ.՝ մոտ 66, պոչինը՝ 101 *մմ*, կ. զ.՝ մոտ 7 *գ*: Հանդիպում է Փամբակի, Ծաղկունյաց, Բարգուշատի լ–շղթաների ենթալպ. մարգագետիններում: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈՒՖԼՈՆ (Armeniana Nasonov), **անդրկովկասյան լեռնային ոչխար**, սնամեջ եղջերավորների ընտանիքի վայրի ոչխար: Բնաշխարհիկ է, սահմանափակ է տարածված (հիմնականում՝ Սյունիքի և Վայոց ձորի մարզերում ու «Խոսրովի անտառ» արգելոցում): Խոյերի կ. զ.՝ 50–60, մաքիներինը՝ 35–45 *կգ*: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՐՈՐ (Larus armenicus), *որորների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է, տարածված: Մարմնի երկ.՝ 55–60, թևերի բացվածքը՝ 131–143 *սմ*, կ. զ.՝ 1,5 *կգ*: Միակ թռչնատեսակն է, որը ՀՀ–ում կազմում է աշխարհում ամենախոշոր բնադրագաղութները Սևանա և Արփի լճերի կղզիներում և ներկայացված է բնաշխարհիկ տեսակի կարգավիճակով: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՉԱՓ», պայման. հասկացություն, հայկ. բանաստեղծության մեջ կիրառված տաղաչափ. ձև (XIX դ–ի վերջից չի գործածվում): «Հ. չ.»–ի տողը քառանդամ է, 13–16–վանկանի: Հիմնադիրը Արսեն *Բագրատունին* է («Մթացան/ երկինք, և հողմք/ չորից ծագաց/ ոստեան ի կոիւ…»):

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐ, լ–շղթա Հայկ. հրաբխ. բարձրավանդակի կենտր. մասում՝ Բյուրակնն և Մասիս լ–լանջերի միջև: Երկ.՝ ավելի քան 250 *կմ*, լայն.՝ 30–35 *կմ*, առլզն բարձր.՝ 3445 *մ* (Սուկավետ լ.): Զրբաժան է Սև և Կասպից ծովերի ու Պարսից ծոցի ավազանների միջև: Հ. պ–ում տիրապետում է չոր տափաստան., լեռնատափաստան., բարձրադիր մասերում՝ լեռնամարգագետն. բուսածածկույթը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐՏԻԶԱՆԱԿԱՆ ՁՈՒԿՍ Միկոյանի անվան, կազմակերպվել է ՀՄՊ–ի ժամանակ՝ 1943–ի սեպտ–ին, Ուկր. ԽՍՀ ժիտոմիրի մարզում՝ գերմ. գերությունից փախած խորհրդ. բանակի հայ ռազմիկներից: Հրամ.՝ լեյտ. Ա. Հովսեփյան: Մարտնչել է Ուկր. հեծյալ պարտիզան. միավորման կազմում: 1944–ի մարտին ջոկատն ավարտել է պարտիզան. պայքարը, և նրա անադմները շարունակել են կռվել խորհրդ. բանակի շարքերում:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ Խաչատուր Աբովյանի անվան (1948–ից), մանկավարժ. կադրեր պատրաստող ՀՀ ամենախոշոր բուհն է: Ստեղծվել է 1922–ին՝ ԵՊՀ–ի մանկավարժ. ֆակ–ի հիմքի վրա: Մինչև 1948–ը՝ Երևանի մանկավարժ. ինստ., 1948–2000–ին՝ Հայկ. պետ. մանկավարժ. ինստ.: Ունի առկա և հեռակա ուսուցման 13 ֆակ.: 2015–ին ուներ շուրջ 14 հզ. ուսանող:

Ռեկտորներ՝ Գուրգեն Էդիյան, Արշավիր Շավարշյան, Մուշեղ Սանթրոսյան, Սահակ Հայրապետյան, Սարիբեկ Բուդումյան, Սամվել Պետրոսյան, Ասլան Մելքոնյան, Վազգեն Աղուզումյան, Վարդգես Համազասպյան, Կամո Ուդումյան, Աշոտ Փարեմուզյան, Մուսայել Քոչարյան, Հայկազ Պողոսյան, Լեմվել Վալեսյան, Էդուարդ Ղազարյան, Գևորգ Բաղդասարյան, Միսակ Դավթյան, Արտուշ Ղուկասյան, Ռուբեն Միրզախանյան (2011–ից):

«ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ», հումանիտար գիտ–յունների հանդես (2003–ից, Երևան): ՀՊՄՀ հրտ–յուն:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՍԻՆԵՄԱ», ազգ., քաղ., մշակութ., երգիծ., պատկերազարդ շաբաթաթերթ (1925–26, Կահիրե): Արտոնատեր–հրտ.՝ Ալեքսանդր *Սարոխան*, խմբ–ներ՝ Վարդան Չազարյան, Երվանդ *Օտյան*:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ», հայ. 1–ին համընդհ. բնույթի հանրագիտարանը: Լույս է տեսել 1974–1987–ին Երևանում՝ յուրաքանչյուր հատորը՝ 100 հզ. օրինակով: Հրատարակել է Հայկ. հանրագիտարանի և տեղեկատու գիտ. գրկ–յան գլխ. խմբագրությունը (2002–ից՝ «*Հայկական հանրագիտարան. հրատարակչություն*»): Բաղկացած է 12 հիմն. և 1 լրացուցիչ («Սովետական Հայաստան») հատորներից: Ներառում է 38 767 բառահոդված, 15 263 պատկեր (գունավոր և սև–սպիտակ), 858 քարտեզ և հատակագիծ: Գլխ. խմբ–ներ՝ Վիկտոր Համբարձումյան (h. 1), Աբել *Սիմոնյան* (h. 2–4), Մակիչ *Արզումանյան* (h. 5–12 + 1):

ՀԽՍՀ Պետ. մրց. (1988):

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ, գիտահաս. կամավոր. կազմյուն: Ստեղծվել է 1990-ին Երևանում՝ ԽՍՀՄ սոցիոլոգ. ասոցիացիայի հայկ. բաժանմունքի (1984–90) հիման վրա: Նպատակը Հայաստանում սոցիոլոգիան, որպես գիտ-յուն, զարգացնելն է: Բաժանմունքներ ունի Գյումրիում, Ստեփանակերտում (ԼՂՀ): 1992-ից անդամակցում է Միջազգ. սոցիոլոգ. ասոցիացիային: Նախագահներ՝ Լյուդվիգ Մ. Կարապետյան, Գևորգ Պողոսյան (1990–ից):

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՎՐՈՍ, Արևելյան Տավրոս, ծալքաբեկորավոր լ-շղթաների համակարգ Հայկ. լ-աշխարհի հվ. մասում: Երկ.՝ մոտ 480 *կմ*, լայն.՝ 30–50 *կմ*, առլգն բարձր.՝ 3090 *մ* (Նուրիակ լ.): Կտրտված է Արածանի (Եփրատ), Տիգրիս գետերի ու դրանց բազմաթիվ վտակների խորը հովիտներով: Կենտր. մասում է Ծովք լիճը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, հայ. բնագրերի, նաև այլալեզու հրտ-յուններում օտարատառ հայալեզու կամ հայատառ օտարալեզու տպագրությունների ամբողջությունը: Հ. տ-յան պատմությունը պայմանականորեն բաժանվել է 3 շրջանի՝ ինատիպ գրքի (1512–1800, շուրջ 1100 անուն), նոր (1801–1918) և Հայոց պետականության սկզբնավորումից (1918–ից) ցայսօր: Սկզբնավորվել է 1512-ին Վենետիկում՝ *Հակոբ Մեղապարտի* ջանքերով՝ առաջին գիրքը՝ *Ուրբաթագիրք*: Հակոբ Մեղապարտի տպագր. ավանդույթները (մինչև XVI դ-ի վերջ) շարունակել են *Աբգար Թոխաթեցին*, *Սուլթանշահ Աբգարյան Թոխաթեցին*, *Հովհաննես Տերզնցին*:

1616-ին Լվովում տպարան է հիմնադրել *Հովհաննես Քարմատաննեցը*, 1636–38-ին Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքում՝ *Խաչատուր Կեսարացին* (առաջինն է Միջին Արևելքում և տպագր. գյուտի արժեք ունի). վերջինիս գործը շարունակել է *Հովհաննես Ջուղայեցի Քթոնչենցը*:

1658-ին Ամստերդամում տպարան է հիմնադրել *Մատթեոս Ծարեցին* (հայտնի է Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարան անվանումով): 1664-ից այն տնօրինել է *Ոսկան Երևանցին*, 1669-ին տեղափոխել է Լիվոռնո, 1672-ին՝ Մարսել (մինչև 1686-ը 3 քաղաքում տպագրել է 41 անուն գիրք, այդ թվում՝ հայ. 1-ին Աստվածաշունչը (1666–68): 1685–1717-ին Ամստերդամում գործել է *Վանանդեցիների* տպարանը:

Հայ ինատիպ գրքի տպագրության գլխ. կենտրոնը եղել է Կ. Պոլիսը (մինչև 1800-ը լույս է ընծայվել շուրջ 300 անուն գիրք, ճանաչված էին *Գրիգոր Մարզվանեցին*, *Ապտվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցին*, Ջնչին Հովհաննեսը, Ստեփանոս Պետրոսյանը, Պողոս *Արապյանը*, Հովհաննես *Մյռհենտիսյանը*, Ճանիկ *Արամյանը* և ուր.), ապա՝ Վենետիկը (շուրջ 260 անուն, հայտնի էին Գասպար Սահրադյանի և Թադևոս Համազասպյանի, *Խոջա Նահապետ Գույնազարի*, իտալացիներ Միքելանջելո Բարբոնիի, Անտոնի Բորտոլիի, Ջիովաննի Բաշոյի և ուր., 1789–ից՝ ՄՄ տպարանները):

Բուն Հայաստանում 1-ին տպարանը հիմնադրվել է 1771-ին Էջմիածնում՝ *Սիմեոն Ա Երևանցի* կաթողիկոսի ջանքերով: 1772-ին Շահամիր *Շահամիրյանը* տպարան է հիմնադրել Մադրասում, 1781-ին Գրիգոր *Խալդարյանը*՝ Ս. Պետերբուրգում, 1889–99-ին Հովսեփ *Արղությանը*՝ Նոր Նախիջևանում, ապա՝ Աստրախանում: 1512–1800-ին հայ. գրքեր լույս են տեսել նաև Հռոմ, Փարիզ, Բավիա, Յյուրիխ, Բեռլին, Ֆյոլն, Մայնի Ֆրանկֆուրտ, Լոնդոն, Լայպցիգ, Պադուա, Պարմա, Հաղեմ, Նյուրնբերգ, Ջմյուռնիա, Տրիեստ, Կալկաթա, Մոսկվա և այլ ք-ներում:

1801–1920-ին տպարաններ են հիմնադրվել Թիֆլիսում (1823, *Ներսիսյան դպրոցի տպարան*), Շուշիում (1827), Երուսաղեմում (1833), Վանում (1858), Թեոդոսիայում (1858), Մուշում (1863), Բաքվում (1870), Երևանում (1875), Ալեքսանդրապոլում (1876), Նոր Բայազետում (1890), Գորիսում (1909), Աշտարակում, ինչպես նաև Կիլիկիայում (Ադանա, Համն, Տարսոն, Մարաշ, Ալեքսանդրետ ևն), Կարինում, Խարբերդում, Սեբաստիայում, Պարտիզակում, Մարզվանում, Նիկոմեդիայում, Երզնկայում, Կարսում, Ախալցխայում, Ախալքալաքում, Օդեսայում, Անապայում, Արմավիրում, Եկատերինոդարում, Պյատիգորսկում, Սուխումում, Բաթումում և այլուր: 1512–1918-ին լույս են ընծայվել ավելի քան 18 հզ. անուն հայ. գրքեր, շուրջ 2 հզ. անուն պարբ-ներ:

1918-ից Հ. տ-յան գլխ. կենտրոնը դարձել է Երևանը: 1921-ին կազմակերպվել է *Հայպետհրատը* (1964-ից՝ «*Հայաստան*»), որից հետագայում առանձնացել են մի քանի մասնագիտացված հրտչ-յուններ՝ «*Լույս*», «Սովետական գրող» (այժմ՝ «*Նաիրի*»), «*Արևիկ*» ևն, 1966-ից սկսել է գործել «*Հայկական հանրագիտարան. հրատարակչություն*»-ը: Այժմ ՀՀ-ում գործում են՝ «Անտարես մեդիա հոլդինգ», «Ամարաս», «Գիտություն», ԵՊՀ-ի, «Զանգակ», «Էդիթ Պրինտ», «Մուղնի», «Սարգիս Խաչենց», «Տիգրան Մեծ» և այլ հրտչ-յուններ: 1920–90-ին արտերկրում Հ. տ-յան կարևոր կենտրոններ էին Կ. Պոլիսը, Թեհրանը, Երուսաղեմը, Հալեպը, Բեյրութը, Անթիլիասը, Կահիրեն, Փարիզը, Բոստոնը, Նյու Յորքը, Լոս Անջելեսը, Տորոնտոն ևն, որոնց զգալի մասն այսօր էլ շարունակում է իր ակտիվ գործունեությունը: Տպարաններ գործում են նաև ԼՂՀ-ում՝ «Վաչագան Բարեպաշտ», «Դիզակ պլյուս», «Սոնա» ևն:

Ցայսօր տպագրվել են շուրջ 130 հզ. անուն հայ. գիրք և գրքույկ, շուրջ 4 հզ. անուն պարբ.:

ՀԱՅԿԱԿԱՆ ՓԻԼԻՍՓԱՅԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, փիլ-յան ընագավառը միավորող գիտահաս. կամավոր. կազմյուն ՀՀ-ում: Ստեղծվել է 1990-ին՝ ԽՍՀՄ փիլ-յան ընկ-յան հայկ. բաժանմունքի (1975–90) հիման վրա: Նպատակը փիլ-ների գործունեությունը խթանելն է, փիլ. և հայագիտ. կազմ-յունների հետ միջազգ. կապեր հաստատելը ևն: Կազմակերպում է միջազգ. և հանրապետ. գիտաժողովներ, հրատարակում է «Տարեգիրք» (1982–ից):

ՀԱՅԿԱՆՈՒՇԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ, իգական կրթ. հաստատություն Այնթապում (Կիլիկիա): Հիմնադրվել է 1878-ին: Սկզբում եղել է ծաղկոց, ապա՝ 6-ամյա նախակրթարան: 1904-ից ունեցել է մասնաճյուղեր: Փակվել է 1915-ին, վերաբացվել 1919-ին և գործել մինչև 1922-ը:

«ՀԱՅԿԱՀԵՂ», գր., քաղ. ամսաթերթ (1917–18, Թիֆլիս): Վերակազմյալ ինչակյան կուս-յան Կովկաս. կենտր. վարչության հրտ-յուն:

«ՀԱՅԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՀՀ ԳԱԱ ԳԱ կենտրոն, կազմավորվել է 2010-ին՝ կենսատեխնոլոգիայի ԳՀԻ-ի և ՀՀ ԳԱԱ մանրէաբանության ինստ-ի ու Մանրէնեղի ավանդադրման կենտրոնի միավորմամբ: Գործունեության հիմն. ոլորտներն են կենսաբանորեն ակտիվ նյութերի ստացման եղանակների և տեխնոլոգիաների մշակումը, մանրէաբանության ժամանակակից հիմնահարցերի ուսումնասիրումը, նոր և ԳԱ նշանակության հեռանկար. մանրէների ավանդադրումը, բժշկության, դեղագործության, գղտյան, սննդարդ-յան, երկրագիտ-յան և բնապահպանության բնագավառներում առկա կենսատեխնոլոգ. խնդիրների լուծումը: Հիմնադիր-տնօրեն՝ Աշոտ *Սաղյան*:

ՀԱՅԿՅԱՆՑ Արմեն Մերուժանի (ծ. 1973), իրավաբան: Իրավաբ. գիտ. դ-ր (2007), պրոֆ.: Աշխ-ները վերաբերում են սեփականության և ժառանգման իրավունքի զարգացման, պայմանագր. և ընտանեկան հարաբերությունների իրավ. կարգավորման հարցերին:

ՀԱՅԿՈ (Հակոբյան Հայկ Բորիսի, ծ. 1973), փոփ երգիչ, երգերի հեղինակ: ՀՀ վաստ. արտիստ (2006): «Խաչագողի հիշատակարանը» ֆիլմի սաունդթրեքի հեղ. (Հատուկ մրց.՝ 2013): 2007-ին Հայաստանը ներկայացրել է «Եվրատեսիլում» (8-րդ տեղ): Գրել է կինոերաժշտություն («Մի վախեցիր», «Սպանված աղավնի», «Ոչինչ չի մնա», «Հոբելյանական հաճախորդ», «Գարեգին Նժդեհ» ևն):

«Տարվա լավագույն երգիչ» մրց. (1998, 1999, 2002, 2003 և 2006), «Տասնամյակի մրց.» (2012, Մոսկվա):

ՀԱՅԿՈ (Hajko) Վլադիմիր (1920–2011), սլովակ ֆիզիկոս: ՌԳԱ արտ. անդամ (1991, ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ՝ 1982-ից), Սլովակիայի ԳԱ նախագահ (1979–94): Աշխ-ները վերաբերում են մագնիսականությանը և ցածր ջերմաստիճանների ֆիզիկային, ստացել ու ուսումնասիրել է ամորֆ մագնիսներ: Կ. Գոտվարդի անվ. Պետ. մրց.:

ՀԱՅԿՈՈՒ (Haikou), ք. Չինաստանում՝ Հայնան կղզում, Հայնան պրովինցիայի վարչ. կենտրոնը: Նվինգսո՝ Հվ-չին. ծովի նեղուցում: Բն.՝ 830,1 հզ. (2006): Զարգացած են մեքենաշինությունը, քիմ., սննդի, բամբակեղենի արդ-յան ճյուղերը:

ՀԱՅԿՈՒՆԻ Արմենակ (Ճիզմեճյան Համբարձում Հարությունի, 1835–1866), գրող, հաս-մշակութ. գործիչ, խմբ.: 1857–58 և 1863–66-ին՝ *«Մուսայք Սիսեանց»* շաբաթաթերթի խմբ. և հրտ., 1861–62-ին՝ *«Ծաղիկ»* (Գրիգոր *Չիլինկիրյանի* հետ), 1863–66-ին՝ *«Պեզասեան թռչնիկ»*, 1864-ին, միաժամանակ՝ *«Մեղու»* պարբ-ների խմբ.: «Հայկազյան ընկերության» (1858) հիմնադիր: Հեղինակ է «Էլիզա» (1861) վեպի, «Պղատոն ի Վոսբոր» (1860), «Համառոտ պատմութիւն եւ աշխարհագրութիւն Հայոց» (1864) աշխ-ների:

ՀԱՅԿՈՒՆԻ Գուրգեն Սարգսի (1889–1966), քաղ. գործիչ, հրապարակախոս, գրող: Սարգիս *Հայկունու* որդին: 1918-ին Հ-ու նախաձեռնությամբ հիմնադրվել է Հայաստանի կոմկուսը: 1920–34-ին աշխատել է Մոսկվայի տարբեր հրտչ-յուններում: 1937-ին անհիմն բռնադատվել է, աքսորվել, հետագայում՝ արդարացվել:

ՀԱՅԿՈՒՆԻ (Ղազարյան) Սարգիս (1832–1908), բանահավաք, ազգագրագետ: Գուրգեն *Հայկունու* հայրը: Հեղինակ է «Բագրևանդ. Ջրաբաշխ գաւառ» (մաս Ա, 1894), «Յուսէփցի ազգատոհմ եւ տարօրինակ աւազակ Աբրիեամ Տրապիզոնի հայ

գիւղերու մէջ: 1795–1840 թթ.» (1905) և այլ աշխ–ների: Հ. հայտնաբերել և գրառել է «Սասնա ծռեր»–ի Արարատյան, Մոկաց, Շատախի, Խլաթի պատումները, «Մօքռս» (1896) վիպերգը, համակարգել և հրապարակել իր գրառած (շուրջ 50 բարբառով) բանահյուս. նյութերը: Գրառել է նաև առակներ («Կենդանական վէպ», հ. 1, 1907):

ՀԱՅՀԵ, գետ Չինաստանի արմ–ում: Առաջացնում է Բայհե, Յուդինհե և Վեյհե գետերի համակարգի հոսանքի ներքին մասը՝ Տյանցզին ք–ի և Դեղին ծովի Բոհայվան ծոցի միջև: Երկ.՝ 102 *կմ*, ավազանը՝ 280 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 650 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է:

ՀԱՅ–ՀՈՆԱԿԱՆ ԴԱՇԻՆՔ 450, ռազմ. փոխօգնության դաշինք հայերի և հոնների միջև՝ Սասանյան Պարսկաստանի դեմ: Կնքվել է Վարդանանց պատերազմի ժամանակ՝ Խաղխաղի ճակատամարտում հայերի հաղթանակից հետո: Հոները հայերին օգնել են Ավարայրի ճակատամարտից հետո՝ ավերելով պարսիկներին անցած Ճորա պահակը և ասպատակելով պարսկ. տերության սահմանամերձ շրջանները:

ՀԱՅ–ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԴԱՇԻՆՔ 1254, կնքել են Կիլիկիայի հայոց թագավոր *Հեթում Ա*–ն և մոնղ. մեծ խան Մանգուն (Մունքե) Ղարաղորում (Կարակորում) ք–ում: Մոնղ. կողմը երաշխավորել է Կիլիկյան Հայաստանի անկախությունն ու սահմանների անխախտությունը, պարտավորվել օգնել Իկոնիայի և Եգիպտոսի սուլթանությունների դեմ պայքարում, իսկ Կիլիկյան Հայաստանը՝ զինակցել մոնղոլներին՝ Հս. Միջագետք, Ասորիք ու Պաղեստին արշավելու ժամանակ: 1307–ից Հ–մ. դ. այլևս չի գործել:

ՀԱՅՄՈՐ (Highmore) Նաթանիել (1613–1685), անգլիացի անատոմ և բժիշկ: Հեղինակ է անատոմիայի հիմնարար ձեռնարկի, համեմատ. անատոմիայի վերաբերյալ աշխ–ների: Նկարագրել է քթի վերին ծնոտային ծոցը, որը կոչվել է հայմորյան խոռոչ:

ՀԱՅՄՈՐԻՏՍ, վերինծնոտ. (հայմորյան) ծոցի լորձաթաղանթի և ոսկրային պատերի բորբոքում: Հաճախ գրիպի բարդություն է: Ախտանշանները՝ ախտահարված ծոցի շրջանի ցավեր, քթից լորձ. կամ թարախ. արտադր–յուն: Նկարագրել է Ն. *Հայմորը*:

ՀԱՅՆ (Hain) Լյուդվիգ (1781–1836), գերմանացի մատենագիր, գրքի պատմաբան: Կազմել է «Մատենագիտական ցանկ» (1826–38, որտեղ նկարագրված են 16 299 ինկունաբուլաներ):

ՀԱՅՆ Քրիստոֆ (ծ. 1944), գերմանացի գրող: Հեղինակ է «Կրոմվել» (1978) և այլ պատմ. դրամաների, «Օտար ընկերը: Վիշապի արյուն» (1982, հայ.՝ 2011) վիպակի, սոցիալ–հոգեբ. «Հոռնի մահը» (1985) ռեալիստ. վեպի, «Տանգո» (1989), «Վիլենբրոկ» (2000), «Տիկին Պաուլա Տրուսո» (2007) վեպերի, պատմվածքների, թարգմ–ների: Հ. Մանի (1982), Դ. Լեսինգի (1989) անվ., Ավստրիայի Պետ. (2002) մրց–ներ:

ՀԱՅՆԱՆ, 1. կղզի Հվ–չին. ծովում, Չինաստանի համանուն նահգ: Տարածքը՝ 34 հզ. *կմ*^{2}, բն.՝ 8,7 մլն (2010): Հս–ում հարթավայր է, հվ–ում և կենտրոնում՝ լեռներ (բարձր.՝ մինչև 1867 *մ*): Մշակում են բրինձ, բամբակ, շաքարեղեգ: Գլխ. քաղաքը՝ Հայկոու: 2. Նեղուց. Հվ–չին. ծովը միացնում է Բակբո ծոցի հս. մասի հետ: Երկ.՝ 93 *կմ*, լայն.՝ ամենանեղը՝ 18,5 *կմ*, խոր.՝ առլզն՝ 36 *մ*: Նվինգստ–ը՝ Հայկոու ք–ը:

ՀԱՅՆԵ (Heine) Թոմաս Թեոդոր (1867–1948), գերմանացի գրաֆիկ: Իր հիմնադրած երգիծ. «Սիմպլիցիսսիմուս» ամսագրում (1896) տպագրել է մոդեռն ոճի նկարներ, որտեղ ծաղրել է քաղքենիությունն ու գերմ. իշխանություններին («Մութ Գերմանիայում», նկարաշար, 1899–1910):

ՀԱՅՆԵ Հայնրիխ Քրիստիան Յոհան (մինչև 1825–ը՝ Հարրի, 1797–1856), գերմանացի բանաստեղծ (ծնունդով՝ հրեա, 1831–ից՝ վտարանդի): Վաղ շրջանի քնարերգությունը հագեցած է ժող. բանաստեղծ. արվ–ով («Երգերի գիրք», 1827, հայ.՝ 1935), «Ուղեգրական պատկերներ» (հ. 1–4, 1826–31): 1835–ից Հ–ի ստեղծագործություններն արգելվել են: Ֆրանսիայում տպագրվել է գերմ. և ֆրանս., եղել է ֆրանս. և գերմ. մշակույթների ջատագով («Սալոն», հ. 1–4, 1833–40): «Ֆրանսիական գործեր» (1832) և «Լյուտեցիա» (1840–47) երկերում պատկերել է ֆրանս. քաղ. կյանքի տարեգրությունը, «Ֆրանսիացի նկարիչներ» (1831) ակնարկաշարում, «Ֆրանսիական բեմի մասին» (1837) նամակներում հանդես է եկել որպես քննադատ: «Ռոմանտիկական դպրոցը» (1833) և «Գերմանիայի կրոնի և փիլիսոփայության պատմության շուրջ» (երկուսն էլ՝ գերմ., 1834) աշխ–ներում ներկայացրել է Գերմանիայի կյանքն ու մշակույթը: Հեղինակ է նաև «Լյուդվիգ Բյոռնե» (1840) պամֆլետի, «Ատտա Տրոլ: Ամառային գիշերվա երազը» (1843) երգիծ. պոեմի, պրուսականությունը, կրոն. բարոյականությունը քննադատող «Գերմանիա: Հյուսիսային հեքիաթ» (1844) գործի, «Ռոմանսներ» (1851) բանաստեղծությունների ժող–ի, «Խոստովանություն» (1853–54) արձակ երկի: Հ–ի ստեղծագործությունները հայ. թարգմանել են Հ. Թումանյանը, Վ. Տերյանը, Ա. Ծատուրյանը, Ե. Չարենցը և ուր.: Հայ. հրատարակվել են «Ծաղկաքաղ» (1882), «Բանաստեղծութիւններ եւ քերթուածներ» (1898), «Առակներ» (1969) ժող–ները, «Երկերը» (հ. 1–2, 1958–59):

ՀԱՅՆԵՄԱՆ (Heinemann) Գուստավ (1899–1976), ԳԴԵՀ նախագահ՝ 1969–74–ին: Մինչև 1952–ը՝ ՔԴՄ անդամ: Կ. Ադենաուերի գլխավորած կառ–յան անդամ (1949–50): 1966–69–ին՝ արդարադատության նախարար:

ՀԱՅՆԿԵԼ (Heinkel) Էռնստ (1888–1958), գերմանացի ավիակոնստրուկտոր և արդյունաբերող, տեխ. գիտ. դ–ր, պրոֆ.: 1922–ին հիմնադրել է «Հայնկել» ֆիրման և ստեղծել է բազմաթիվ ռազմ. ու քաղաքաց. ինքնաթիռներ, այդ թվում՝ Հե–112, Հե–113 կործանիչները, Հե–111, Հե–177 ռմբակոծիչները, Հե–162 հրթիռ. կործանիչ–կալանիչը:

ՀԱՅՆՐԻԽ I Թռչնորս (Heinrich, մոտ 876–936), Գերմանիայի թագավոր՝ 919–ից: Սաքսոն. հարստության հիմնադիրը: Զիջումների գնով վերջ է դրել Շվաբիայի և Բավարիայի հերցոգների ապստամբություններին, պայքար մղել քոչվոր հունգարների դեմ: Նվաճել է Լոթարինգիան (925), որից հետո թագավորությունը կոչվել է Գերմ. թագավորություն:

ՀԱՅՆՐԻԽ III (1017–1056), Գերմանիայի թագավոր և Հռոմ. սրբազան կայսրության կայսր՝ 1039–ից: Իտալ. արշավանքի (1046–47) ժամանակ գահազրկել է ընդդիմացող պապերին և նշանակել իր կողմնակիցներին:

ՀԱՅՆՐԻԽ IV (1050–1106), Գերմանիայի թագավոր և Հռոմ. սրբազան կայսրության կայսր՝ 1056–ից՝ Ֆրանկոնյան հարստությունից: Պայքարել է Հռոմի պապերի (Գրիգորի VII և ուր.) դեմ, սակայն անհաջողության է մատնվել:

ՀԱՅՆՐԻԽ V (1086–1125), Գերմանիայի թագավոր և Հռոմ. սրբազան կայսրության կայսր՝ 1106–ից՝ Ֆրանկոնյան հարստությունից: Հաջողության է հասել պապականության դեմ պայքարում՝ կնքելով Վորմսի կոնկորդատը (1122):

ՀԱՅՆՐԻԽ VI (1165–1197), Գերմանիայի թագավոր՝ 1190–ից, և Հռոմ. սրբազան կայսրության կայսր՝ 1191–ից՝ Շտաուֆենների հարստությունից: Ամուսնանալով Սիցիլիայի գահաժառանգի հետ (1186)՝ Շտաուֆենների տիրույթներին է միացրել Սիցիլիական թագավորությունը:

ՀԱՅՆՐԻԽ VII (1274–1313), Գերմանիայի թագավոր՝ 1308–ից, և Հռոմ. սրբազան կայսրության կայսր՝ 1312–ից՝ Լյուքսեմբուրգների հարստությունից: Չեխ. գահին է հասցրել իր որդուն՝ հռչակելով որպես Յան Լյուքսեմբուրգցի: 1310–ին ներխուժել է Իտալիա՝ փորձելով այն կրկին ենթարկեցնել կայսրությանը:

ՀԱՅՆՐԻԽ ԱՌՅՈՒԾ (Heinrich der Löwe, 1129–1195), Սաքսոնիայի (1142–80) և Բավարիայի (1156–80) դուքս: Զավթել է արմ. սլավոն. բողոքիչներ ցեղերի հողերը: Կայսր Ֆրիդրիխ I Բավարացու հետ հակադրության պատճառով կորցրել է գրեթե բոլոր տիրույթները (1180):

ՀԱՅՈՐԴԱՅ ՏՆԵՐ, արտադպրոց. դաստիարակության հաստատություններ: Բացվել են ՀՀ–ում 1993–ից՝ խորհրդ. տարիների պիոներների պալատների հիմքի վրա՝ ՀԱԵ–ի, ՀԲՈՄ–ի, «Քինիշյան» հիշատակի հիմնադրամի, անհատ. բարերարների հովանավորությամբ: Հ. տ–ում սաներն ստանում են ազգ. և հոգևոր կրթություն ու դաստիարակություն, մասնագիտանում արվ–ի և արհեստի տարբեր ճյուղերում: Գործում են 8 Հ. տ. (3500 սան):

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, հիմնադրել է Երվանդ *Լալայանը* 1906–ին Թիֆլիսում: Նպատակն ազգագր. և մարդաբան. աշխ–ներն Այսրկովկասում ընդլայնելն էր: Մասնաճյուղեր ուներ Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Նոր Բայազետում և այլուր: Հրատարակել է «*Ազգագրական հանդէս*»–ի շուրջ 26 հատոր, կազմել Վասպուրականի հայկ. ձեռագրերի ցուցակը, Թիֆլիսում ստեղծել է հնագիտ. և ազգագր. թանգարան ևն:

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ, բացվել է 1978–ին Սարդարապատում՝ հուշահամալիրի հարևանությամբ՝ երկհարկանի շենքում (1974–77, ճարտ.՝ Ռաֆայել *Իսրայելյան*): Թանգարանում պահվում են 70 հզ–ից ավելի մշակութ. արժեքներ: Ունի հնագիտ., ազգագր. նմուշների, լուսանկարների, գեղանկարների, փաստաթղթերի, արխիվ. նյութերի, ժամանակակից դեկորատիվ–կիրառ. արվ–ի և այլ ժողղ–ների էթնիկ մշակույթների հավաքածուներ: Տնօրեններ՝ Լավրենտի Բարսեղյան, Գրիգոր Հասրաթյան, Հրաչ Սարգարյան, Աղասի Մարգարյան, Վլադիմիր Դարբինյան, Կարեն Արիստակեսյան (2007–ից):

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ (ՀԱԽ), **Արևելահայ ազգ. խորհուրդ**, հայ հաս. բոլոր հոսանքները ներկայացնող մարմին Թիֆլիսում 1917–ի սեպտ. 27–հոկտ.

13–ին: 1918–ի մայիսի 28–ին ՀԱԽ–ն «...իրեն հայտարարում է Հայաստանի Հանրապետության գերագույն և միակ իշխանություն, ստանձնել է կառավարական բոլոր ֆունկցիաները...»: ՀՀ Կառ–յան ստեղծումով ՀԱԽ–ը լուծարվել է:

«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ», հաս–քաղ. օրաթերթ (1997–ից, Երևան): Հիմնադիր–խմբ.՝ Գագիկ *Մկրտչյան*:

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, թատեր. կազմ–յուն: Հիմնադրվել է Թիֆլիսում՝ որպես Հայկ. թատրոնական ընկ.՝ Մարիամ *Թումանյանի* և Գաբրիել *Սունդուկյանի* նախաձեռնությամբ, գործել է 1901–21–ին: Նպաստել է հայ թատրոնի զարգացմանը, խաղացանկի հարստացմանը, դերասան. կայուն խմբերի ստեղծմանը նն:

ՀԱՅՈՑ ԵՐԳԱՉԽՄԲԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, գործել է 1917–21–ին Թիֆլիսում (ղեկ.՝ Սպիրիդոն *Մելիքյան*, 1921–ին՝ Կարո *Զաքարյան*): Տարածել է բազմաձայն երաժշտություն, կազմակերպել կանանց, տղամարդկանց և խառը երգչախմբեր, աջակցել երգիչների մասնագիտ. ուսուցմանը: Երկացանկում՝ ժող., հայկ. հոգևոր երգեր, հայ, ռուս և այլ ազգերի կոմպոզիտորների խմբերգ. երկեր:

ՀԱՅՈՑ ԻՇԽԱՆ, Հայաստանի կառավարողների կոչումն ու պաշտոնը V–IX դդ–ում: Հ. ի. են կոչվել Հայաստանի բյուզ. մասի կառավարիչները (V–XV դդ., 591–ից՝ պատրիկ Հայոց), անկախ կառավարիչը (VII դ.), արաբ. տիրապետության ժամանակ՝ կառավարիչը, որը ենթարկվել է *Արմինիայի* ոստիկանին: IX դ–ի 1–ին կեսին Հ. ի. կոչվում էր իշխանաց իշխան, որին ենթակա էր ողջ Արմինիան:

«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», գիտամեթոդ. ամսագիր (2000–ից, Երևան): ՀՀ ԿԳՆ Կրթության ազգ. ինստ–ի հրտ–յուն: Գլխ. խմբ.՝ Դավիթ *Գասպարյան*:

ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ (ՀՀՇ), հաս. շարժում: Ձևավորվել է 1988–ին՝ *Ղարաբաղյան շարժման* ընթացքում՝ Լևոն *Տեր–Պետրոսյանի* գլխավորությամբ: Հիմն. խնդիրը կոմ. վարչակարգի դեմ պայքարող բոլոր կազմ–յուններին և անհատներին միավորելն էր և իշխանափոխության հասնելը: ՀԽՍՀ 11–րդ գումարման ԳԽ ընտրություններում (1990–ի մայիս) ՀՀՇ–ն եկել է իշխանության: ՀՀՇ իշխանությունը հռչակել է Հայաստանի անկախությունը (1991–ի սեպտ. 21–ի հանրաքվեով): 1995–ի ԱԺ ընտրություններում ՀՀՇ–ն (մասնակցել է «Հանրապետություն» դաշինքի կազմում) ստացել է 65 տեղ, ՀՀ նախագահ Լ. Տեր–Պետրոսյանի 1998–ի հրաժարականից հետո՝ 1999–ի ընտրություններում չի ստացել ոչ մի տեղ: 2013–ից, որպես կուս–յուն, մտել է «Հայ ազգային կոնգրես» քաղ. միավորման մեջ (նախագահ՝ Արամ Մանուկյան՝ 2012–ից):

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, հայ ազգ–ազատագր. կազմ–յուն: Ստեղծել են *«Արմենիա»* լրագրի շուրջ համախմբված գործիչները 1888–ին Մարսելում (Ֆրանսիա)՝ Մկրտիչ *Փորթուգալյանի* գլխավորությամբ: Եղել է *Արմենական կազմակերպության* միջուկը:

ՀԱՅՈՑ ՁՈՐ, *Հավու ձոր*, գվո Մեծ Հայքի Վասպուրական նահանգ–ում՝ Հայոց ձոր (այժմ՝ Խոշաբ) գետի հովտում: Տարածվում է Վանա լճի հվ–արլ. եզերքից մինչև Հայկ. Տավրոսի լ–շղթան: XX դ–ի սկզբին կենտրոնն էր Կղզի գ–ը: Ըստ ավանդության՝ Հ. ձ–ում է տեղի ունեցել Հայկի հաղթ. ճակատամարտը Բելի դեմ: Ճակատամարտի տեղում Հայկը կառուցել է Հայք կամ Հայկաբերդ դաստակերտը, որի անունով այնուհետև գվո–ը կոչվել է Հ. ձ.: Միջին դարերում մտել է Վասպուրականի իշխանության, ապա՝ թագավորության մեջ:

ՀԱՅՈՑ ՁՈՐԻ ԴԱՇՏ, *Հայոց ձորի* գվո–ում՝ Վանա լճի գոգավորությունում: Տարածքը՝ 260 *կմ²*: Դարավանդ. հարթավայր է՝ ծածկված լճագետ. նստվածքներով: Հս–ով հոսում է Խոշաբ գետը: Բնորոշ է տափաստան. ու տափաստանամարգագետն. բուսածածկույթը:

ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՄԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ, կրթ. հաստատություն Կալկաթայում: Հիմնադրվել է 1821–ին՝ ջուղայեցի վաճառական Աստվածատուր Մուրադխանյանի կտակած և Մ՝նացական Վարդանյանի հանգանակությամբ հավաքած գումարով: 1845–ին ճեմարանին է միացվել Հ. Ավդալյանի հիմնադրած Գալուցյան դպրոցը (1842), 1949–ին՝ Դավթյան օրիորդաց (1922) դպրոցները: Ունի գիշերօթիկ բաժին: Հայագիտ. առարկաները դասավանդվում են հայ–ով, մյուսները՝ անգլ–ով: 1883–ին ճեմարանը պաշտոնապես ճանաչվել է երկրորդ. դպրոց, 1888–ին դասվել է *Կալկաթայի համալսարանի* քոլեջների կարգը: 1824–ից ունեցել է տպարան, որը գործել է շուրջ 50 տարի: 1999–ից ճեմարանը հանձնվել է ՀԱԵ տնօրինությանը:

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԹՎԱԿԱՆ, սկիզբ է առնում 552–ի հուլիսի 11–ից: Հ. մ. թ–ի 1–ին ամսի՝ նավասարդի 1–ն այդ տարի համընկել է Հուլյան տոմարի հուլիսի 11–ին, իսկ տարվա հիմն. եկեղեց. տոները՝ Սր Ծնունդն ու Զատիկը՝ համապատասխանաբար՝ 553–ի հունվ. 6–ի և ապրիլի 20–ի հետ: Հ. մ. թ–ի հիմնադրման հարցը քննարկվել է 554–ի Դվինի ժողովում, սակայն պաշտոնապես ընդունվել է 584–ին՝ *Մովսես Բ Եղիվարդեցի* կաթողիկոսի օրոք: Կոչվել է նաև Թուականութիւն Հայկազեան տոհմի, Թուաբերութիւն Արամեան, Թորգոմեան թուական նն: Հ. մ. թ. և Քրիստոսի ծնունդով հաշվվող թվականության միջև կապն արտահայտվում է հետևյալ կերպ՝ Հ. մ. թ. ստանալու համար մինչև Ք. ծ. 1320–ը պետք է հանել 551, 1320–ից հետո՝ 550 (1320–ին նավասարդի 1–ը համընկել է հունվ. 1–ին):

ՀԱՅՈՑ ՏՈՄԱՐ, **հայկական օրացույց**, ժամանակի հաշվարկի համակարգ, որն օգտագործվել է Հայաստանում: Պատկանում է արեգակն. հնագույն տոմարների (եգիպտ., զրադաշտ., հուլյան նն) թվին: Մինչև հայ գրերի ստեղծումը (V դ.) Հ. տ–ի մասին տեղեկությունները սակավաթիվ են: Դրանք հիմնականում կապված են իրեղեն հուշարձանների (ժայռապատկերներ, գոտի–օրացույցներ, կենցաղ. իրեր) հետ: Հայկ. լ–աշխարհի բնակիչներն օգտվել են լուսն., այնուհետև՝ լուսնաարեգակն. օրացույցներից: Ըստ վերջինի՝ *տարին* սկսվում էր գարնանամուտից, ուներ 12 լուսն. ամիս, որոնք բաժանված էին շաբաթների: Լուսնաարեգակն. օրացույցներում օրացուցային հաշիվները տարվա եղանակների ժամանակի հետ համապատասխանեցնելու նպատակով որոշ տարիներ հաշվվել են ոչ թե 12, այլ 13 ամիս: Ենթադրվում է, որ մ. թ. ա. I հզ–ամյակի կեսին հայերն սկսել են օգտագործել 12 x 30 + 5 տեսակի արեգակն. օրացույց՝ հիմքում ունենալով արևադարձ. տարին: Ձեռագրերում պահպանված մի ավանդության համաձայն՝ Հ. տ–ի սկիզբը կապվում է Հայկ՝նահապետի՝ Բելի դեմ կռվում տարած հաղթանակի հետ (ըստ Վևոնդ *Ալիշանի*՝ մ. թ. ա. 2492), իսկ *ամիսների* անունները՝ Հայկի որդիների և դուստրերի անունների հետ:

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՋՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ, նշվում է ապրիլի 24–ին (1915–ի այդ օրը թուրք. իշխանությունները Կ. Պոլսում ձերբակալել են և աքսորել հայ մտավորականների մեծ խմբի): Հայաստանում 1–ին անգամ պետ. մակարդակով նշվել է 1965–ի ապրիլի 24–ին: 1988–ի նոյեմբ. 22–ին ՀԽՍՀ ԳԽ–ն ընդունել է 1915–ի Հայոց ցեղասպանությունը դատապարտող օրենք, որով ապրիլի 24–ը հայտարարվել է Հ. ց. զ. հ. օ.:

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ–ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀՀ ԳԱԱ, գիտամշակութ. հաստատություն: Բացվել է 1995–ին Երևանում: Նպատակը Հայոց ցեղասպանությանը վերաբերող փաստաթղթեր, լուսանկարներ, գրկ. և վավերագր. այլ նյութեր հավաքելն է, մշակելը, հրատարակելը, պահպանելն ու ցուցադրելը: Ունի հրտչ–յուն (1996–ից): Հրատարակում է Հայկ. հարցին, Հայոց ցեղասպանությանը վերաբերող փաստավավերագր., գեղ. գրքեր (նաև օտար հեղինակների), ականատեսների ու վերապրողների վկայություններ և հուշեր, դիվանագիտ. փաստաթղթերի ժող–ներ՝ հայ. և օտար լեզուներով, «*Ցեղասպանագիտական հանդես*»–ը (2011–ից): Թանգարան–ինստ–ի տնօրեններ՝ Լ.Ավրենտի Բարսեղյան, Հայկ Դեմոյան (2006–ից):

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ, *Հայերի գենոցիդ*, *Մեծ եղեռն*, 1890–ական թթ–ին, ԱՀՊ–ի և դրան հաջորդած տարիներին երիտթուրք. և քեմալ. կառ–յան՝ Արմ. Հայաստանում, Կիլիկիայում և Օսմ. կայսրության մյուս հայաբնակ վայրերում, ինչպես նաև Արլ. Հայաստանում հայ ազգաբնակչության բնաջնջման նպատակով կատարած գործողությունները, որոնց ընթացքում կոտորվել է 1,5 մլն. հայ, 800 հզ. դարձել են գաղթական, 200 հզ–ից ավելին՝ բռնի մահմեդականացվել: *Արևմտյան Հայաստանը* զրկվել է իր բնիկ հայ բնակչությունից: Բնորոշվում է որպես XX դ–ի 1–ին *ցեղասպանություն*:

Չնայած օրհասական կացությանը՝ հայությունը մի շարք վայրերում դիմել է ինքնապաշտպանության (տես *Վանի հերոսամարտ 1915*, *Սասունի ինքնապաշտպանություն 1915*, *Մուսա լեռան հերոսամարտ 1915*, *Շապին Գարահիսարի հերոսամարտ 1915*, *Ուրֆայի հերոսամարտ 1915* նն):

Թուրքիայի Հանրապետությունը ցարդ մերժում է Հ. ց–յան ճանաչումը, սակայն այն ճանաչել ու դատապարտել են ավելի քան 20 երկիր (պետ. տարբեր մակարդակներով և օրենքներով) և միջազգ. կազմ–յուններ: Հ. ց–յան անհերքելի ապացույցներից են նաև Կ. Պոլսում *«Միություն և առաջադիմություն»* կուս–յան ղեկ. գործիչների դատավարության նյութերը (տես *Երիտթուրքերի դատավարություն 1919–20*):

Հ. ց–յան 100–րդ տարելիցին (2015) ՀԱԵ–ն սրբադասել է Հ. ց–յան անմեղ զոհերին:

ՀԱՅՈՑ ՓՈՔՐ ԹՎԱԿԱՆ, **Սարկավագաիր թվական**, *Հայոց մեծ թվականի* սկզբից՝ 532–ամյա պարբերաշրջանից

հետո (1084) սկսվող թվական: Հիմնադրել է *Հովհաննես Սարկավագը*: Հ. փ. թ–ի 1–ին տարվա հիմն. եկեղեց. տոները՝ Սբ Ծնունդն ու Զատիկը, համընկել են, համապատասխանաբար, 1085–ի հունվ. 6–ի և ապրիլի 20–ի հետ: Այս թվականի հետ կապված տոմարով տարին սկսվում է օգոստ. 11–ից և հաշվվում 365,25 օր (4 տարին մեկ՝ 366 օր): Հ. փ. թ. պաշտոնապես չի ընդունվել. այն գործածվել է սահմանափակ՝ Հայոց մեծ թվականին զուգահեռ: Տես նաև *Հայոց տոմար*:

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ, **Պետհրատ**, Խորհրդ. Հայաստանում 1–ին պետ. բազմաճյուղ հրտչ–յունը: Հիմնադրվել է 1921–ին Երևանում (տնօրեն՝ Միսակ *Էփրիկյան*), 1964–ից՝ «*Հայաստան*»: Հ–ից են անջատվել Կուսհրատը, Տեխհրատը, Հայպետուսմանկհրատը (այժմ՝ *«Լույս»*), «Սովետական գրող» (1991–ից՝ «*Նաիրի*») հրտչ–յունները:

ՀԱՅ–ՊՈՆՏԱԿԱՆ ԴԱՀՃԻՆՔ մ. թ. ա. 94, կնքել են Հայոց թագավոր *Տիգրան Բ* Մեծը և Պոնտոսի թագավոր *Միհրդատ VI* Եվպատորը: Ըստ Հ–պ. դ–ի՝ համատեղ ուժերով նվաճած երկրների տարածքն անցնելու էր Միհրդատ VI–ին, իսկ շարժ. գույքը և բնակչությունը՝ Տիգրան Բ–ին: Դաշինքն ամրապնդվել է Տիգրան Բ–ի և Միհրդատ VI–ի դուստր Կլեոպատրայի ամուսնությամբ: Հ–պ. դ. խզել է Տիգրան Բ–ն մ. թ. ա. 66–ին՝ Միհրդատ VI–ին կասկածելով իր դեմ կազմակերպած դավադրության մեջ:

ՀԱՅ–ՌՈՒՍԱԿԱՆ ԴԱՀՃՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ, Հայաստանի ապագա քաղ. կառուցվածքին, հայկ. պետության և Ռուս. կայսրության հարաբերությունների վերաբերող փաստաթղթեր (XVIII դ–ի վերջ): Դրանցից մեկի հեղինակն արք. Հովսեփ *Արղությանն* էր, մյուսինը՝ Շահամիր *Շահամիրյանը*: Արղությանի նախագիծը (1783) առաջարկում էր վերականգնել հայոց թագավորությունը՝ Ռուսաստանի հովանու ներքո: Ըստ Շահամիրյանի նախագծի (1780–ական թթ)՝ ազատագրված Հայաստանը դառնալու էր Ռուսաստանին բարեկամ ինքնուրույն հանրապետություն (տես նաև *«Որոգայթ փառաց»*):

ՀԱՅ–ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, հիմնադրվել է 1997–ին Երևանում՝ ՌԴ և ՀՀ համատեղ բուհի կարգավիճակով: Ունի 15 ֆակ.: Շրջանավարտներն ստանում են ՌԴ և ՀՀ պետ. նմուշի դիպլոմ: 2015–ին ուներ 2,5 հզ. ուսանող: Ռեկտորներ՝ Լևոն Մկրտչյան, Արմեն Դարբինյան (2001–ից):

«ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԲԸ, ներքին շուկայում բնական գազի մատակարարումն ու իրացումն ապահովող ընկ. ՀՀ–ում: Ստեղծվել է 1997–ին՝ ՀՀ Կառ–յան և ռուս. «Գազպրոմ» ԲԲԸ պայմանագրով: 2014–ին վերանվանվել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ–ի («Գազպրոմ» ԲԲԸ–ի դուստր ձեռն.):

ՀԱՅՄԱՎՈՒՐՔ, *Յայսմաւուրք* (գրաբար՝ «յայսմ աւուր» – «այս օրը»), եկեղեց. ծիսամատյան, տոնելի և հիշատակելի սրբերի կյանքի ու նահատակության պատմությունների համակարգված ժող.: Կազմվել է V–XV դդ–ում: Հ–ի կազմավորումը կապված է Սողոմոն Մաքենացու, Գագիկ վրդ–ի (IX–X դդ.), Ատոմ եպս–ի (X դ.) անունների հետ: Հատուկ նշանակություն ունի *Գրիգոր Բ Վկայասեր* կաթողիկոսի կազմած Հ., որը հիմք է դարձել հայոց Հ–ի տարբեր խմբագրությունների համար:

ՀԱՅ–ՎՐԱՑԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՍԿԱԴՐՈՆ, վրաստանաբնակ հայերից և վրացիներից կազմված ստորաբաժանում ռուս. բանակում (1723–64): Ստեղծվել է Թիֆլիսում՝ Վրաց թագավոր Վախթանգ VI–ի աջակցությամբ և թիֆլիսաբնակ հայ Ղուզանենց–Ղուզանյանների տոհմի ջանքերով: 1724–ից Հ–վ. մ. է. մասնակցել է Կասպից ծովի ավազանում ծավալված ռազմ. գործողություններին: Դանձակում ռուս–իրան. պայմանագրի կնքումից հետո Հ–վ. մ. է. հայերից կազմված մյուս զորամիավորումների հետ տեղափոխվել է Աստրախան–Ղզլար, և նրա հետագա ճակատագիրը կապվել է *Հայկական էսկադրոնի* հետ: Հ–վ մ. է. մասնակցել է Ռուս–թուրք. (1735–39), Ռուս–շվեդ. (1756–39) և Յոթնամյա (1756–63) պատերազմներին:

ՀԱՅՏԻՆՔ (Haitink) Բեռնարդ (ծ. 1929), նիդեռլանդացի դիրիժոր: 1988–ից՝ Լոնդոնի «Քովենթ Գարդեն» օպեր. թատրոնի երաժշտ. ղեկ.: Աշխատել է Վիեննայի ֆիլհարմոնիկ և այլ նշանավոր նվագախմբերի հետ: «Գրեմմի» մրց. (2004), «Տարվա երաժիշտ» (2007):

ՀԱՅՏԼԵՐ (Հեյտլեր, Heitler) Վալտեր Հենրիխ (1904–1981), գերմանացի ֆիզիկոս և քիմիկոս–տեսաբան, *քվանտային քիմիայի* հիմնադիրներից: Լոնդոնի թագավոր. ընկ–յան անդամ (1948): Մշակել է H_2 մոլ–ի հաշվարկման մոտավոր մեթոդ (Ֆ. *Լոնդոնի* հետ, 1927), առաջարկել տիեզ. ճառագայթների հեղեղների կասկադային տեսությունը:

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ, *Ապոկալիպսիս* (հուն.՝ apokalypsis – հայտնություն), Սուրբ Հովհաննես առաքյալի և աստվածաբան ավետարանչի հայտնությունը, Նոր կտակարանի գրքերից վերջինը (68–69 կամ 95): Հ. Հ. պարունակում է Քրիստոսի և *հակաքրիստոսի* պայքարի, «աշխարհի վերջի», «Աստծու հազարամյա թագավորության» մասին մարգարեությունները:

ՀԱՅՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, *հայրախոսություն, պատրիստիկա, պատրոլոգիա* (< լատ. pater – հայր և *…լոգոս*), 1. II–VIII դդ–ի եկեղեցու հայրերի աստվածաբան., փիլ. և սոցիալ–քաղ. ուսմունքների համախումբ: Հ. պայմանականորեն բաժանում են արլ. (հուն.) և արմ. (լատ.): Զարգացել է *ջատագովության* (II–III դդ., Տերտուլիանոս, Կղեմես Աղեքսանդրացի, Որոգինես), եկեղեցու ուսմունքի համակարգում (IV–V դդ., Արևելքում՝ կապադովկյան դպրոց՝ Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նազիանզացի, Գրիգոր Նյուսացի, Արևմուտքում՝ Օգոստինոս Երանելի), դոգմատիզմի կայունացման (VI–VIII դդ., Լ. Բուզանդացի, Ս. Բոեցիուս) շրջաններով: Հայաստանում ջատագով. 1–ին երկերը վերագրում են *Գրիգոր Լուսավորչին*, սակայն ջատագովության հիմնադիրը *Մեսրոպ Մաշտոցն* է: Հ–յան զարգացմանը նպաստել է նաև *Հովհաննես Գ Օձնեցին*: Հայ իրականության մեջ Հ. դարձել է փիլ. և աստվածաբան. մտքի ավանդույթների ձևավորման հիմքը: 2. Աստվածաբանությունն ու եկեղեցու հայրերի ստեղծագործություններն ուսումնասիրող եկեղեց. գիտ–յան բաժին:

ՀԱՅՐԱՊԵՏ, *Հայրապետ քահանա*, XII դ–ի վերջ–XIII դ–ի սկզբի գրիչ, մանրանկարիչ: Հայտնի են Հ–ի նկարազարդած 2 Ավետարան՝ գրված Սերաստիայում (1200, 1211, Մոնդ., ձեռ. № 2589, 987), որոնց զարդագրերը, լուսանցազարդերն ու գլխազարդերը հայ գրքարվ–ի ուշագրավ նմուշներից են:

ՀԱՅՐԱՊԵՏ, 1. բարձրաստիճան հոգևորականների ընդհ. անվանումը, որևէ եկեղեցու պետ՝ պատրիարք, կաթողիկոս, պապ: 2. Նախնիների պետ՝ նախահայր, նահապետ:

ՀԱՅՐԱՊԵՏ ՈՒՍՏԱ, XVII դ–ի ճարտ., շինարար վարպետ: Պահպանվել է Որոտան գետի վրա (ՀՀ Սյունիքի մարզի Դարբաս գ–ի մոտ) նրա կառուցած միաթռիչք կամարակապ կամուրջը («Արզումանի կամուրջ», 1675):

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Ալբերտ Ալեքսանդրի (1926–1998), նյարդաֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ–ր (1983): Աշխ–ները վերաբերում են շարժող. վերլուծիչի, ներքին արգելակման նուրբ տեղակայման ֆիզիոլոգիայի հարցերին, նաև տեսող. բուրգի առբերիչ և արտատար գործունեության նեյրոնային մեխանիզմներին:

ՀԱՅՐՊԵՏՅԱՆ Ալլա Մկրտչի (ծ. 1963), բուսաբան, պալինոլոգ: Կենսբ. գիտ. դ–ր (2010): Աշխ–ները վերաբերում են ծաղկափոշու ուսումնասիրության խնդիրներին:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Անահիտ Կառլենի (ծ. 1958), հիգիենիստ: Բժշկ. գիտ. դ–ր (2001): Աշխ–ները վերաբերում են Հայաստանի բնակչության ընդհ. մահացության մակարդակի և պատճառագիտ. կառուցվածքի բժշկասոցիալ. ու տարածաշրջ. առանձնահատկություններին:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Արկադի Պետրոսի (1928–1993), կինոռեժ.: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1980): Հայֆիլմում (1975–ից՝ բեմադրող ռեժ.) նկարահանել է «Սարոյան եղբայրներ» (Խորեն *Աբրահամյանի* հետ, 1968), «Արևիկ» (Առնոլդ *Աղաբաբովի* հետ, 1978), «Կորիոլան» (ֆիլմ–ներկայացում, 1983) ևն: Հեղինակ է նաև սցենարների:

ՀԽՍՀ Պետ. (1970), Հեռուստաֆիլմերի միջազգ. XVI կփ Մեծ (1979, Պրահա), Համամիութ. կփ Հատուկ (1984, Ալմա Աթա) մրց–ներ:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Գրիգոր (Գուրգեն) Միքայելի (1914–1998), ԽՄ հերոս (1940), փոխգնդ.: 1939–40–ին մասնակցել է Խորհրդա–ֆինն. պատերազմին, աչքի ընկել Սաներհայմի գծի ճեղքման ժամանակ, որի համար էլ արժանացել է հերոսի կոչման:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Գրիգոր Սիմոնի (1889–1948), ֆիզիոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (1924), պրոֆ. (1926): Աշխ–ները վերաբերում են նյարդ. բջիջների ուսումնասիրությանը: 1937–ին անհիմն բռնադատվել է, 1948–ին՝ արդարացվել:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Երվանդ (1894–1975), բանասեր, խմբ.: 1930–ին՝ «Հայաստան» (Բուխարեստ) շաբաթաթերթի, 1936–37–ին՝ *«Ալիք»* օրաթերթի գլխ. խմբ.: Կազմել է «Պատմութիւն հայ մատենագրութեան» (մաս Ա, 1954) գիրքը: ՄՏԿԿ «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան (1972):

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Էդվարդ Գրիգորի (ծ. 1949), կոմպոզիտոր: Հեղինակ է բալետի, օրատորիայի, 2 սիմֆոնիայի, կոնցերտների, կամեր. և վոկալ գործերի, կինոեռաժշտության ևն:

Ա. Խաչատրյանի անվ. մրցույթի (1993, Երևան), ԹՄՄ (2008) մրց–ներ, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2009):

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Էդուարդ Մելիքի (1927–2010), հողագետ: Գղտ. գիտ. դ–ր (1972), պրոֆ. (1973): Աշխ–ները վերաբերում են հողերի էրոզիայի զարգացման շարժըն–

թացներին, հողերի պահպանման և արդյունավետ օգտագործման խնդիրներին:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Թամար Լազարի (ծ. 1963), բանագետ: Բանասիր. գիտ. դ–ր (2014): Հեղինակ է «Կոստանդին Մելիք-Շահնազարյան (Տմբլաչի Խաչան)» (2007), «Արքետիպային հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ» (2016) և այլ աշխ-ների:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Լեոնիդ Միքայելի (ծ. 1943), մարզիչ, մրցավար: Սամբո ըմբշամարտի ԽՍՀՄ ս. վ. (1967, պատվ.՝ 1970), համամիութ. (1977), միջազգ. (1979), միջազգ. առաջնակարգ (1981) կարգի մրցավար, ՀԽՍՀ (1978), ԽՍՀՄ (1981) վաստ. մարզիչ, ՀՀ ֆիզկուլտուրայի վաստ. աշխատող (2001): Հայաստանում կանանց սամբո և ձյուդո ըմբշամարտի հիմնադիրը, Հայաստանի սամբոյի ֆեդերացիայի նախագահ (1991): Ղարաբաղյան շարժման և պատերազմի մասնակից, փոխգնդ.:

ՀՀ «Մարտական ծառայությունների համար» մեդալ (2001):

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Լիդիա Գեորգիի (ծ. 1945), ուռուցքաբան-քիմիաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1991), պրոֆ. (1991): Աշխ-ները վերաբերում են ուռուցք. հիվանդությունների բուժման նպատակով նորագույն դեղամիջոցների կիրառմանն ու փորձարկմանը, ուռուցք. հիվանդության քրոնոմոդուլյացիոն բուժման սկզբունքներին:

ՌԲՍԳԱ անդամ (2014):

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Համլետ Գրիշայի (ծ. 1965), սրտաբան: Բժշկ. գիտ. դ–ր (2014), պրոֆ. (2014): 2014–ից՝ ՀՀ ԱՆ գլխ. սրտաբան, 2015–ից՝ «Էրեբունի» ԲԿ սրտաբան. կենտրոնի ղեկ.: Աշխ-ները վերաբերում են սրտամկանի ինֆարկտի, սրտային անբավարարության, սրտի քրոնիկ իշեմիկ հիվանդության հարցերին:

ՀՀ «Մխիթար Հերացի» (2011), ԱՆ ոսկե (2015), ՀՀ ՊՆ «Դրաստամատ Կանայան» (2016) մեդալներ, Ֆրիտյոֆ Նանսեն հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2013):

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հայրապետ Սարդարի (1874–1962), մանկագիր, թարգմանիչ: ՀԽՍՀ վաստ. ուսուցիչ (1950): Հեղինակ է «Մեղուների կոմունան» (1931), «Իմ երգերը» (1939, 1951), «Փիսիկի դասը» (1966), «Սարյակի տունը» (1988) բանաստեղծությունների, հեքիաթների, պոեմների, առակների ժողովների, «Գայլ Վահան» (1943) պատմ. պոեմի և այլ գործերի: Թարգմանել է համաշխ. դասականների մանկ. գործերից: Հ–ի տեքստերով գրել են մանկ. երգեր:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ (Մեժլումյան) Հասմիկ Սուրենի (ծ. 1966), կենսաբան-գենետիկ: Կենսբ. գիտ. դ–ր (2002): Աշխ-ները վերաբերում են հայերի պարբեր. հիվանդության համար պատասխանատու MEFV գենի մուտացիաների, հիվանդության գենոտիպի և ֆենոտիպի հարաբերակցության հարցերին:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Սարգարիտ Վահագնի (1923–2004), ճարտ.: ՀՀ վաստ. ճարտ. (1971): Հ–ի նախագծերով և համահեղինակությամբ Երևանում կառուցվել են բազմահարկ շենք՝ Տիկնիկ. թատրոնով (1968), Օղակաձև զբոսայգու 1-ին (1963) և 4–րդ (1968) հատվածները, Հ. Թումանյանի անվ. զբոսայգին (1981), մարզ. կառույցներ՝ Ծաղկաձորում, Արտաշատում, Բակուրիանիում և այլուր: «Տարվա լավագույն կառույց» (1985) համամիութ. ստուգատեսի դափնեկիր:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Միքայել Խաչատուրի (1926–1998), վիրաբույժ-ուռուցքաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1970), պրոֆ. (1975): ՀՀ-ում առաջինն է կիրառել ուռուցքների կենսազննման ընդունակությանն առանձին մեթոդներ և մշակել լիմֆոգրանուլեմատոզի արմատ. վիրահատման մեթոդներ:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Յուրի Սուրենի (ծ. 1933), դաշնակահար, մանկավարժ: ՀՀ ժող. արտիստ (1976): Երևանի (1978–ից) և Մոսկվայի (1994–ից) կոնսերվատորիաների պրոֆ.: Նվագացանկում՝ հայ, ռուս, արևմտաեվրոպացի դաս. և արդի կոմպոզիտորների երկերից: Երիտասարդության և ուսանողների V համաշխ. փառատոնի (1955, Վարշավա), Ֆ. Լիստի (1956, Բուդապեշտ) և Եղիսաբեթ թագուհու անվ. (1960, Բրյուսել) միջազգ. մրցույթների դափնեկիր, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2004):

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Ներսես Վարազդատի (ծ. 1956), գրադարանագետ, մատենագետ: 1994–2003–ին՝ *Հայկական գրադարանային ասոցիացիայի* հիմնադիր-նախագահ: Հեղինակ է «Ամերիկյան գրադարանագիտություն և տեղեկատուներ» (2001) ժող–ի, կազմել է «Մատենագիտություն նորանուն հայկական պարբերական մամուլի. 1987–1996» (1999) ժող–ը, «Հյուսիսային Կովկասի գրադարանները և ովքով է գրադարանների ոլորտում» (ռուս., 2003) տեղեկատուն:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Ռուբեն Արմենի (ծ. 1987), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (2015): Աշխ-ները վերաբերում են հանրային կառավարման, տեղական ինքնակառավարման և կառավարման ընդհանուր տեսության խնդիրներին:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Սերգեյ Ստեփանի (ծ. 1939), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1991), պրոֆ. (1991): Աշխ-ները վերաբերում են հասարակության մեջ երիտասարդության տեղի ու դերի հարցերին: Հեղինակ է «Քաղաքագիտություն» (2008) բուհ. դասագրքի:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Սերգեյ Սուրենի (ծ. 1960), քիմիկոս-վերլուծաբան: Քիմ. գիտ. դ–ր (2012): Աշխ-ները վերաբերում են քրոմատագրությանը, պինդ ֆազային լուծահանման համար օգտագործվող սորբենտների և կրիչների սինթեզին, բարձրարդյունավետ հեղուկ. քրոմատագրությանը: ՀՀ նախագահի մրց. (2005):

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Սերգո Արտուշի (ծ. 1952), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ–ր (2005), պրոֆ. (2012): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2014): 1997–ից՝ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտ. հետազոտությունների կենտրոնի հիմնադիր-տնօրեն, կենտրոնի՝ «Գիտական աշխատություններ» պարբ. ժող–ի հիմնադիր-խմբ. (1998–ից): Հեղինակ է «Գրաբարի շարադասությունը» (2005), «Պատմական շարահյուսության հարցեր» (2007) ևն գրքերի: ՀՀ ԿԳՆ ոսկե մեդալ (2013):

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Սիներիկ Ներսեսի (ծ. 1941), կենսաֆիզիկոս: Կենսբ. գիտ. դ–ր (1980), պրոֆ. (1981): «Բջջային և մոլեկուլային կենսաֆիզիկա» (անգլ.) միջազգ. ամսագրի գլխ. խմբ. (2001–ից): Բժշկակենսբ. միջազգ. ուս. կենտրոնի գիտ. ղեկ.: Աշխ-ները վերաբերում են բջջաթաղանթի նյութափոխանակության կարգավորմանը, նաև գերթույլ ֆիզ. և քիմ. ազդակների կենսբ. ազդեցության բջջամոլ. մեխանիզմներին: Մշակել է ցավային գրգիռի առաջացման բջջ. մեխանիզմի նոր տեսություն: Կենսաֆիզիկոսների համահայկ. ընկ–յան նախագահ:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Սոս Դերենիկի (ծ. 1959), մականորդ (խոտի հոկեյ): ԽՍՀՄ ս. վ. վ. (1984): ԽՍՀՄ տանմեկակի չեմպիոն և հնգակի գավաթակիր, Եվրոպայի առաջնության 2–րդ մրցանակակիր, օլիմպ. խաղերի բրոնզե մեդալակիր (1980), Եվրոպայի երկրների չեմպիոնների գավաթակիր (1983, 1984):

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Վազգեն Գրիգորի (1909–1991), վիրուսաբան: Անասնաբուժ. գիտ. դ–ր (1954), պրոֆ. (1960): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): Աշխ-ները վերաբերում են գղտ. կենդանիների համաճարակաբանության, վիրուս. հիվանդությունների ախտորոշման, դրանց կանխարգելման միջոցառումների մշակման հարցերին: Հ–ի առաջարկած վակցինաները ներդրվել են խոզերի և թռչունների ժանտախտի, պաստերելիոզի և Աուեսկիի հիվանդությունների դեմ:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Վահագն Կարապետի (ծ. 1968), կոմպոզիտոր, դաշնակահար: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2008): «Կատուներ» խմբի հիմնադիրը (2005): Հեղինակ է կինոերաժշտության: Թողարկել է ձայնասկավառակներ՝ Բ. Հանթինգթոնի (բաս), Զ. Մարսալեսի (հարված. գործիքներ), Կ. Զոնսոնի (սաքսոֆոն), Հ. Բաթլերի (դաշնամուր) և «Ֆլորիդա Ջազ Ֆեստ Մարվին Ուիլյամս» նվագախմբի հետ:

Միջազգ. մի շարք փառատոների դափնեկիր, «Հայակ» մրց. (2013):

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Վահրամ Տորիկի (ծ. 1970), կենդանաբան: Կենսբ. գիտ. դ–ր (2014): 2011–ից՝ ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են թերիալոգիայի, կենդանիների էկոլոգիայի, կենդանաաշխարհագրության խնդիրներին: ՀԱԱՀ ոսկե հուշամեդալ (2015):

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Վաղարշակ Կարապետի (1921–1994), Փառքի 3 աստիճանի շքանշանակիր (1944, 1945, 1945): ՀՄՊ-ի ժամանակ եղել է սակրավոր: Աչքի է ընկել Պրուտի գետանցման, Վիսլա գետով հետախույզների անցումն ապահովելու, Օդեր գետի վրա թշնամու պաշտպ-յունը ճեղքելու, Շպրե գետով հետախույզների անցումը կազմակերպելու գործողություններում:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Վարդան Էմինի (ծ. 1948), բանասեր, թարգմանիչ: Ա. Ղանալանյանի «Ավանդապատումից» (ռուս., 1979) թարգմանել է 87 ավանդություն, կազմել առարկայական և անվան. ցանկերը: Ռուսաց լեզվի և ռուս. բանահյուսության հիման վրա ուրվագծել է ռուս. հերմենևտիկայի (մեկնության արվ.) նոր ուղղություն:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Վլադիմիր Ասատուրի (ծ. 1942), ՀՀ բանակի գեն–մայոր (1994): 1986–90–ին՝ ԽՍՀՄ զորքերի կենտր. խմբավորման բանակ. կորպուսի (ԲԿ) շտաբի պետ, 1990–92–ին՝ Սիբիրի ՋՕ ԲԿ հրթիռահրետան. զորքերի պետ, 1992–2003–ին՝ ՀՀ ՊՆ հրթիռահրետան. զորքերի վարչության պետ: Զորացրվել է 2003–ին: ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1–ին աստիճանի մեդալ (2012):

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Վլադիմիր Կարապետի (1927–2015), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1983), պրոֆ. (1986): ՀՀ բարձրագույն դպրոցի վաստ. գործիչ (1985): Աշխ-ները վերաբերում են արդ–յան տեղաբաշխման, արդ. արտադր–յան ճյուղ. կառուցվածքին և այլ հարցերի:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ3 Էրվանդ Շամիրի (1906–1975), ֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ-ր (1953), պրոֆ. (1953): ԽՍՀՄ գիտ-յան վաստ. գործիչ: Աշխ-ները վերաբերում են տարած. վերլուծության և կեղևաընդերա-յին փոխհարաբերության հարցերին: Կ. Մ. Բիկովի հետ բացահայտել է գլխուղեղի կեղևի կապը ներքին օրգանների հետ: ԽՍՀՄ ԳԱ Ի. Պ. Պավլովի անվ. մրց. (1949, 1962): ԽՍՀՄ ՀՄՊ-ի 2-րդ աստի-ճանի, Աշխ. կարմիր դրոշի շքանշաններ:

ՀԱՅՐԱՊԵՏՈՎ Շահեն Ալեքսանդրի (1917–2007), ճարտ.: ՌԴ վաստ. ճարտ. (1975): Նրա նախագծերով կառուցվել են Մոսկվայում՝ ՌԳԱ Լեռն. գործի ինստ-ի, ԽՄԿԿ ԿԿ-ին կից հաս. ԳԱ շենքերը, Լյուքսեմբուրգի դեսպանատունը, Դա-մասկոսում՝ ՌԴ դեսպանատան շենքերի համալիրը ևն:

ՀՄՊ 1-ին և 2-րդ աստիճանների, Կար-միր աստղի, «Պատվո նշան» շքանշաններ, Գ. Ժուկովի անվ. և ԺՏՆՑ արծաթե մեդալ-ներ, «Ոսկե հատույթ» մրց. (2005):

ՀԱՅՐԱՎԱՆՔ, **Հայր Հովհաննու վանք**, IX–XIII դդ-ի ճարտ. համալիր ՀՀ Գեղար-քունիքի մարզի Այրիվան գ-ի հս-արլ. եզրին: Պահպանվել են Սբ Ստեփանոս եկեղեցին և գավիթը: Եկեղեցին (IX դ.) խաչաձև-քառախորան կենտրոնագմբեթ կառույց է (վերականգնել են 1980-ական թթ-ին): Արմ-ից երկսյուն գավիթն է (նույ-նատիպներից հնագույնը՝ 1211)՝ միջին քառակուսու վրա բարձրացող երդիկա-վոր գմբեթով:

ՀԱՅՐ-ԲԱԲԱՄՅԱՆ Յան Ալեքսեյի (1907–1997), ճարտ.: ՈՒԽՖՍՀ վաստ. շինարար (1967): ԽՍՀՄ ՇՃԱ ակադ., փոխնախագահ (1950–51), Քաղաքների հատակագծման ինստ-ի տնօրեն (1954–60), գլխ. ճարտա-րապետ (1960–74): Հեղինակ է Շուշենսկո-յե գ-ի, Գուրախա ք-ի, Ղրիմի հվ. ափի կառուցապատման գլխ. հատակագծերի, Տաշքենդում՝ բնակելի թաղամասի, Մոսկ-վայում՝ բնակելի տների, Եվպատորիա-յում՝ երկթղ. կայարանի և այլ կառույցների նախագծերի: ԽՍՀՄ ՆԽ մրց. (1971):

ՀԱՅԵՆ, 1. երգատեսակ հայ հին ժող. քնարերգության մեջ (անվանումը՝ «հայե-րեն» բառից): Եղանակները կառուցվածք. հատկանիշներով միջին տեղ են գրավում ***փաղերի*** և բուն ժող. հանդարտահոս երգերի միջև: Հ-ներից են ցյուղավորվել հոգևոր տաղերին մոտ ***անպուռնիները***: ***Տաղարաններում*** երբեմն հանդիպում են ***խազագիր*** Հ-ներ (սովորաբար՝ «տաղ» վերտառությամբ): Նոտագրված սակա-վաթիվ Հ-ներ կան Կոմիտասի «Ազգա-գրական ժողովածու»-ում և Մ. Թումա-ճանի «Հայրենի երգ ու բան» ժող.-ում:

2. Հայ միջնադար. բանահյուսության մեջ տարածված 15-վանկանի (7–8) բա-նաստեղծ. ձև: Ծագել է «հայերեն ասել», «հայրենի ասել», «հայրենի կարգ» ար-տահայտություններից, որ նշանակել են հայկ. բանաստեղծությանը հատուկ չափ, երգ կամ տաղ: Հ-ներ են գրել Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Ֆրիկը, Մկրտիչ Նաղաշը, Գրիգորիս Աղթամար-ցին: Այս չափով են հորինված Նահապետ Քուչակին վերագրվող և համանման ժող. քառյակները: Ներկայում «Հ.» ասելով՝ հաս-կանում են քառատող բանաստեղծություն:

ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (նախկինում՝ **գավառագիտություն**), երկրի առանձին մասերի (հանրապետություն, երկրամաս, մարզ, բնակավայր ևն) բնության, պատ-մության, բնակչության, կենցաղի բազ-մակողմանի ուսումնասիրություն: Հայկ. աղբյուրներում հայրենագիտ. տեղեկութ-յուններ կան Մովսես Խորենացու, Ստե-փանոս Օրբելյանի, Ղուկաս Ինճիճյանի, Ղևոնդ Ալիշանի, Ստեփան Լիսիցյանի, Ալեքսանդր Քալանթարի, Հովհաննես Կարապետյանի և ուր. աշխ-ներում: Հ. ներառված է ՀՀ հանրակրթ. դպրոցների ծրագրերում: Ներկայում ՀՀ-ում գործում են 10 հայրենագիտ. թանգարաններ, նաև պատմաճարտ. հուշարձաններին կից հայրենագիտ., ինագիտ., պատմ. թան-գարաններ:

ՀԱՅՐԵՆԱՍԱՐՔՈՒԹՅՈՒՆ, անձի վե-րադարձն իր հայրենի երկիր, հայերի համար՝ հայրենիքից բռնի կամ կամավոր հեռացած հայերի՝ ներգաղթը Հայաստան: Հայ ժողդ-ի մի զգալի մասին՝ արևմտա-հայությանը, Մեծ եղեռնի ժամանակ թուրքերը բռնի հայրենազրկել, տեղա-հանել, քշել են արաբ. անապատներ, որ-տեղից փրկվածները տարածվել են ողջ աշխարհով՝ ստեղծելով հայ ***Սփյուռքը***: Սփյուռքահայության Հ. իրականացվել է 3 փուլով. 1-ինը՝ 1921–36-ին (42,2 հզ. հայ), 2-րդը՝ 1946–49-ին (շուրջ 90 հզ. հայ), 3-րդը՝ 1962–82-ին (32,5 հզ հայ): 1970-ական թթ-ի կեսերից Հ. ոչ միայն նվազել է, այլև երկրում սոցիալ-տնտ. կյանքի լուրջ փոփոխությունների հետևանքով սկսվել է արտագաղթ Հայաստանից, որն առանձնապես մեծ չափերի է հասել 1980–90-ական թթ-ին և շարունակվում է ցայսօր: Հ. ներկայում կատարվում է հիմնականում այն երկրներից, որոնք տարբեր պատճառներով կյանքի և ապ-րուստի համար դառնում են անապահով (Իրաքի, Սիրիայի պատերազմներ և այլ ճգնաժամեր):

ՀԱՅՐԵՆԱԶՈՒՐԿ, **ապատրիդ** (լատ.՝ apatris և apolis – հայրենազուրկ), քա-ղաքացիություն կամ հպատակություն չունեցող ֆիզ. անձ, որը չունի նաև իրեն որևէ երկրի քաղաքացիություն (հպա-տակության) վերագրելու ապացույցներ:

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ 1812, Ռու-սաստանի ազատագր. պատերազմը նապոլեոնյան Ֆրանսիայի դեմ: 1812-ի հունիսի 12(24)-ին ֆրանս. բանակը (մոտ 610 հզ. մարդ) անցել է ռուս. սահմանը՝ Նեման գետը, որին փորձել են դիմակայել 1-ին (հրամ.՝ Մ. Բ. Բարկլայ դե Տոլի) և 2-րդ (հրամ.՝ իշխան Պ. Ի. Բագրատիոն) բանակ-ները (մոտ 240 հզ. մարդ): Մի շարք խոշոր ճակատամարտերից (Սմոլենսկի, Բորոդի-նոյի) հետո ֆրանս. բանակը սեպտ. 1-ին մտել է լքված Մոսկվա, որը հրդեհվել է սեպտ. 2–6-ին: Ֆրանսիացիները մնացել են առանց պարենի ու զինամթերքի, հա-լածվել պարտիզան. հարձակումներից: Ռուս. զորքերը, ջախջախելով (նոյեմբ-դեկտ-ին) Նապոլեոնի մեծ բանակը, դեկտ. 14-ին դուրս են շպրտել Ռուսաստանից և անցել է Արևմուտք: 1813–14-ի արշավանք-ներն ավարտվել են Փարիզի գրավմով և Նապոլեոնի կայսրության անկումով:

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ծննդավայրից (կամ հայրենիքից) հեռու որևէ վայրում (երկրում) բնակվող հայ-րենակիցների միավորող կազմ-յուններ: Արմ. Հայաստանից և Կիլիկիայից արտա-գաղթած համերկրացի հայերի 1-ին Հ. մ. ստեղծվել են 1880-ական թթ-ին ԱՄՆ-ում: Նպատակն օտարության մեջ միմյանց սատարելն էր, հայրենիքում մնացած հայրենակիցներին օգնելը և կրթ. գործին նպաստելը: Բազմաթիվ Հ. մ. են ստեղծվել, 1988-ից՝ ՀԽՍՀ-ում, անկախացումից հե-տո՝ նաև ՀՀ-ում (շուրջ 100 Հ. մ.):

«ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ», հայ ազգ-հայրենասիր. խմբակ: Հիմ-նադրել են Մոսկվայի հայ ուսանողները 1882-ին: Նպատակը թուրք. լծից Արմ. Հայաստանի ազատագրումն էր: 1884-ին հրատարակել է «Ազատութեան աւետա-բեր» ընդհատակյա թերթը (4 համար): 1884-ին դադարել է գործելուց:

«ՀԱՅՐԵՆԱՄԷՐ», քաղ., բանասիր. և առևտր. պարբերաթերթ (1843–46, Զմյուռ-նիա՝ աշխարհաբար): Արագածունյաց մշակութ. ընկ-յան հրտ-յուն: Խմբ.՝ Խա-չատուր Մելիք-Սելումյանց:

«ՀԱՅՐԵՆԱՄԷՐ», քաղ., բանասիր. և գր. երկշաբաթաթերթ (1850–53, Նիկոմեդիա (այժմ՝ Իզմիթ, Թուրքիայում)): Խմբ-հրտ.՝ Աբրահամ ***Մուրադյան***:

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, բարոյական ու քաղ. սկզբունք, սոցիալ. զգացմունք, որի բովանդակությունը որոշակի էթ-նիկ հավաքականությանը պատկանելու գիտակցումն է, սերն առ հայրենիքը, ծննդավայրին կապվածությունը ևն: Հայ-րենասերն իր արարքներում դրսևորում է խորագույն հարգանք և սեր հայրենիքի, նրա պատմության, մշակութ. ավանդույթ-ների ու ժողդ-ի հանդեպ:

ՀԱՅՐԵՆԻՔ, 1. այն երկիրը, որտեղ մարդը ծնվել է և որի քաղաքացին է: Պատմա-կանորեն տվյալ ժողդ-ին պատկանող բնատարածքը՝ իր բնությամբ, բնակչութ-յամբ, հաս. և պետ. կառուցվածքով, լեզ-վով, մշակույթով, կենցաղով ևն: 2. Նեղ իմաստով՝ ծննդավայր: 3. Փխբ. իմաստով՝ որևէ բանի առաջացման, հայտնագործ-ման վայր: Տես նաև ***Հայրենասիրություն***:

«ՀԱՅՐԵՆԻՔ», ազգ., գր., քաղ., մշակութ. պարբերաթերթ (1870–96, 1909–10, Կ. Պոլիս): Խմբ-ներ՝ Մինաս Գափամաճյան, Արփիար Արփիարյան, Լևոն Բաշալյան, Վահան Թեքեյան, Երվանդ Օտյան, Հով-հաննես ***Գազանճյան***: Ունեցել է ընդ-գծված ժողովրդավար. ուղղվածություն:

«ՀԱՅՐԵՆԻՔ», ազգ., հաս-քաղ., գր. պար-բերաթերթ (1899-ից, Նյու Յորք, ապա՝ Բոստոն, Ուոթերթաուն): ՀՅԴ Ամերիկայի արլ. շրջանի կենտկոմի պաշտոնաթերթ: Հիմնադիր-խմբ.՝ Թովմաս Զարշաֆյան, խմբ-ներ՝ Միհրան Մինասյան, Արշակ Վռամյան, Հարություն Զաքմաքչյան, Սիամանթո, Սիմոն Վրացյան, Մանուկ Համբարձումյան, Մերուժան Օզանյան, Սահակ Զթչյան, Նշան Տեստեկյուլյան, Ռուբեն Դարբինյան, Վարդգես Ահա-րոնյան, Խոսրով Ներսեսյան, Գուրգեն Մխիթարյան, Երվանդ Խաթանասյան, Մինաս Թոյոլյան, Գևորգ Տոնապետ-յան, Վահագն Գարագաշյան, Խաժակ Մկրտչյան, Զավեն Թորիկյան (2008-ից):

«ՀԱՅՐԵՆԻՔ», գր., հաս., քաղ., տնտ. օրա-թերթ (1915–18, Թիֆլիս): Հրտ-խմբ-ներ՝ Ավագ Մահտեսի-Հակոբյան, Սեդրակ Թառայան:

«ՀԱՅՐԵՆԻՔ», հաս-քաղ., գր-պատմամշա-կութ. հանդես (1922–70, Բոստոն): ՀՅԴ կուս-յան պաշտոն. հրտ-յուն: Խմբ-ներ՝ Ռուբեն Դարբինյան, Մինաս Թոյոլյան: «Հ.»-ի հրապարակումների զգալի մասը հետագա-յում հրատարակվել է առանձին գրքերով:

«ՀԱՅՐԵՆԻՔ ԵՎ ԵԿԵՂԵՑԻ», երիտա-սարդ., կրոնադաստիարակչ., մշակութ. ամսաթերթ (2002-ից, Վանաձոր): ՀԱԵ

Գուգարաց թեմի քրիստ. դաստիարակության կենտրոնի պաշտոնաթերթ:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ, առանձնապես վտանգավոր պետ. հանցագործություն: ՀՀ Սահմանադրությամբ Հ. դ. ծանրագույն հանցագործություն է ժողդ-ի հանդեպ, որը ՀՀ քաղաքացին դիտավորյալ կատարել է ի վնաս ՀՀ պետ. անկախության, տարածք. անձեռնմխելիության կամ ռազմ. հզորության (թշնամու կողմն անցնելը, լրտեսությունը, օտարերկրյա պետությանը պետ. կամ ռազմ. գաղտնիք հայտնելը ևն):

«ՀԱՅՐԵՆԻՔԻ ՁԱՅՆ», ազգ., մշակութ. շաբաթաթերթ (1965–96, Երևան): Սփյուռքահայության հետ մշակութ. կապի կոմիտեի հրտ-յուն: Խմբ-ներ՝ Վահագն Դավթյան, Կամո Վարդանյան, Լևոն Զաքարյան:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, իր երկրի շահերը պաշտպանելու, նրա հզորության ու հեղինակության բարձրացմանը նպաստելու քաղաքացու պարտականություն: Հ. պ. սահմանադր. պարտականություն է (ՀՀ Սահմանադրություն, հոդված 46), որի խախտումը դիտվում է որպես *հայրենիքի դավաճանություն*:

«ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԻՐՈ ԳՐԱՍԵՆՅԱԿ», ազգ–ազատագր. խմբակ: Ստեղծվել է 1874-ի հունիսին Մեծ Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր): Հիմնադիրի՝ Համբարձում Բալասանյան: Եղել է «*Բարենպատակ ընկերության*» մասնաճյուղը: 1875-ի հունիսի 5-ին բացահայտել է ոստիկանությունը, որոշ անդամների ձերբակալել է, սակայն փաստերի բացակայության պատճառով գործին դատ. ընթացք չի տրվել:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ, ստեղծվել է 1921-ի փետր. 18-ին Հայաստանում՝ հակախորհրդ. ապստամբությունը (տես *Փետրվարյան ապստամբություն 1921*) ղեկավարելու համար: Գլխավորել է ՀՀ վերջին վարչապետ Սիմոն *Վրացյանը*: Հ. փ. կ-ի իշխանությունը տարածվել է Էջմիածնի, Աշտարակի, Արարատի, Հրազդանի, Գավառի և Երևանի վրա: 1921-ի ապրիլի 2-ին հարձակման անցած Կարմիր բանակի զորամասերը գրավել են Երևանը: Հ. փ. կ-ի զորամասերը նահանջել են Զանգեզուր: 1921-ի հուլիսին Կարմիր բանակը մտել է Զանգեզուր: Հ. փ. կ-ի անդամներն անցել են Պարսկաստան, կոմիտեն լուծարվել է:

ՀԱՅՐԻԿՅԱՆ Պարույր Արշավիրի (ծ. 1949), քաղ. գործիչ: Ազգ. ինքնորոշում միավորման հիմնադիր-նախագահ (1987–ից): 1968–ից ղեկավարում է Ազգային միացյալ կուս-յունը: 1969–ից 4 անգամ դատապարտվել է և խորհրդ. բանտերում ու ճամբարներում անցկացրել շուրջ 17 տարի (1969–87): 1988–90-ին՝ վտարանդի: 1990-ին նախաձեռնել է «Սյունիք» աշխարհագործի ստեղծումը: 1992-ին նշանակվել է Գորիսի և հարակից շրջանների պարետ, ձեռնարկել Քաշաթաղի (Լաչին) շրջանի ազատագրված տարածքների վերաբնակեցումը: 1998–2002-ին՝ Մարդու իրավունքների հարցերի հանձնաժողովի նախագահ:

ՀԱՅՐԻՅԱՆ Արսեն Պետրոսի (1929–2004), սոցիոլոգ-հիգիենիստ: Բժշկ. գիտ. դ-ր (1968): ԽՍՀՄ ԲԳԱ թղթ. անդամ (1988): ՀԽՍՀ վաստ. բժիշկ: Մարինա *Հայրիանի* հայրը: 1959-ին Հ-ի նախաձեռնությամբ Արմաշում (այժմ՝ ՀՀ Արարատի մարզում) կառուցվել է ԽՍՀՄ-ում միակ՝ գյուղ. վայրերի համար Սան. մշակույթի թանգարանը, իսկ 1987-ին՝ Առողջապ-յան գիտ. կենտրոնը: Կազմել է «Հայ բժիշկ-գիտնականներ» (1998) գիրքը:

ԽՍՀՄ ԲԳԱ Ն. Ա. Սեմաշկոյի անվ. (1970), ԽՍՀՄ Պետ. (1985) մրց-ներ, ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան, ԺՏՆՑ ոսկե մեդալ:

ՀԱՅՐԻՅԱՆ Մարինա Արսենի (ծ. 1956), ակնաբան: Բժշկ. գիտ. դ-ր (2005): Արսեն *Հայրիանի* դուստրը: Առաջինն է բացահայտել ՀՀ-ում ժառանգականորեն պայմանավորված գլաուկոման (17,4 %):

ՀԱՅՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, նախնադար. հաս. հարաբերությունների տարածված ձև, որին բնորոշ է տղամարդու առաջատար դերը տնտ-յան ու հաս-յան մեջ և ընտանիքում: Առաջացել է նախնադար. համայն. հասարակարգի անկման շրջանում: Հ-յանը բնորոշ էին սերունդը հոր գծով հաշվելը, անցումը մենամուսնության ևն:

Հայկ. լ-աշխարհում Հ. առաջացել է էնեոլիթի վերջերին՝ վաղ բրոնզի դարի սկզբին (մ. թ. ա. IV հզ-ամյակի վերջ–III հզ-ամյակի սկիզբ): Հ. նշանակալի ազդեցություն ունի նաև ժամանակակից քաղաքակրթության պայմաններում, չնայած որոշ երկրներում անցել են էգալիտար (հավասարազոր՝ համայնքի բոլոր անդամների համար) հասարակարգի:

ՀԱՅՐՅԱՆ Արմեն Թևանի (1910–1960), ռազմ. ավիացիայի մայոր, ԽՄ հերոս (13.04.1944): ՀՄՊ-ի ժամանակ եղել է էսկադրիլիայի հրամ., 1944–45-ին՝ ավիագնդի հրամ-ի օգնական: Հերոսի կոչման արժանացել է Սևաստոպոլի ազատագրման ժամանակ ցուցաբերած խիզախության համար:

ՀԱՅՐՅԱՆ Գևորգ Արմենակի (1913–1999), գրող, գրականագետ, հրտ.: Բանասիր. գիտ. դ-ր (1969), պրոֆ. (1969): Եղել է «Պրավդայի» սեփ. թղթակիցը Հայաստանում (մինչև 1954), ՀԽՍՀ Բարձրագույն և միջնակարգ մասնագիտ. կրթության նախարար (1954–61), «Սովետական գրող» հրտչ-յան տնօրեն (1979–81): Հեղինակ է «Մեր տան ճանապարհին» (1978), «Ձիթենու ճյուղը» (1981), «Արծվաքար» (1987), «Վահագնի ծնունդը: Աք ազգային հերոս Դրոյի մասին» (հրտ.՝ 2006) և այլ վեպերի, «Կամուրջներ չհանդուրժող Արաքսը» (1983) պատմվածքների, «Ամպը վերից է գալիս» (1998) վիպակների ժող-ների, «Գրականության գլխավոր պրոբլեմը» (1969), «Սերո Խանզադյան» (1979) աշխ-ների, «Փառք և տառապանք» (1999) հուշագրության: ԽՍՀՄ Հոկտ. հեղ-յան շքանշան: Նրա սցենարներով նկարահանվել են գեղ. և վավերագր. ֆիլմեր:

ՀԱՅՐՈՅԱՆ Սարգիս Հրաչիկի (ծ. 1956), երկրաբան: Երկրբ. գիտ. դ-ր (2013): Աշխ-ները վերաբերում են ճարտարագիտ. երկրբ-յան, գրունտների մեխանիկայի, գրունտագիտ-յան հարցերին:

ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆ, երեխայի՝ տվյալ հորից սերած լինելը: ՀՀ օրենսդրությամբ երեխայի հայր է ճանաչվում երեխայի մոր ամուսինը, եթե այլ բան չի ապացուցվել: Եթե երեխան ծնվել է ամուսնալուծությունից կամ ամուսնությունն անվավեր ճանաչելուց կամ երեխայի մոր ամուսնու մահվան պահից հետո՝ 300 օրվա ընթացքում, ապա երեխայի Հ. որոշվում է մոր դիմումի հիման վրա:

ՀԱՅՐՈՒՄՅԱՆ Արտաշես Կարապետի (1905–1988), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (1972), պրոֆ. (1972): Աշխ-ները վերաբերում են գղտ-յան էկոնոմիկայի կազմակերպման, տեղաբաշխման, մերձքաղաք. տնտ-ների ստեղծման և այլ խնդիրների:

ՀԱՅՐՈՒՄՅԱՆ Գագիկ Գևորգի (1933–2007), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (1991): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (1994): Աշխ-ները վերաբերում են ագրար. տնտեսագիտ-յան և կառավարման հարցերին:

ՀԱՅՐՈՒՆԻ Աշոտ Նորայրի (ծ. 1964), պատմաբան, բանասեր, թարգմանիչ: Պատմ. գիտ. դ-ր (2003), պրոֆ. (2008): Աշխ-ները վերաբերում են Րաֆֆու քննադատ. և հրապարակախոս. հայացքներին և Յ. Լեփսիուսի հայանպաստ գործունեությանը: Թարգմ-յուններ է կատարել գերմ-ից:

ՀԱՅՐՈՒՆԻ Արսեն Տիգրանի (1927–2006), հանք. գործի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1972), պրոֆ. (1977): Աշխ-ները վերաբերում են ածխի հորանների գազազերծմանը: Աշակել է գազի առհոսքի արհեստ. նվազեցման մեթոդներ և գազադինամիկ. վտանգավոր երևույթների կանխման արդյունավետ եղանակներ:

Ակադ. Ա. Ա. Սկոչինսկու անվ. (1978), ՌԴ Կառ-յան (2004) մրց-ներ:

ՀԱՅՑ, խախտված, վիճելի իրավունքը կամ օրենքով ապահովվող շահը պաշտպանելու համար դատարանին, իրավարարության կամ միջնորդ դատարանին ներկայացված դիմում: Հ. նյութ. պահանջ է՝ ուղղված պարտավորության մյուս կողմին (օր.՝ քաղաքաց. իրավունքում սեփականատիրոջ Հ.՝ գույքն ապօրինի տիրապետողի դեմ), քաղաքաց. դատավարությունում՝ խախտված կամ վիճարկվող իրավունքի պահանջ:

«ՀԱՅՈՒԹՈՒՆ», ազգ., գր., մշակութ. կիսամսյա թերթ (1992–97, Երևան): Խմբ.՝ Աղասի *Այվազյան*:

ՀԱՅՈՒԻ, Այուի (Haüy), Ռենե Ժուստ (1743–1822), ֆրանսիացի բյուրեղագետ և հանքաբան: Գիտ. բյուրեղագիտ-յան հիմնադիրը: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. անդամ (1806): Հայտնագործել է (1784) բյուրեղագիտ-յան հիմնական օրենքն ըստ մեկը (Հայուիի օրենք), ըստ որի, եթե որպես կոօրդինատ. 3 առանցքներ ընտրվեն բյուրեղի որոշ կողեր, ապա նիստերի փոխադարձ թեքությունները այնպիսին կլինեն, որ կոօրդինատների առանցքների հետ նրանց հատույթները կհարաբերվեն որպես ամբողջ. թվեր:

ՀԱՅՈՒԻ, Այուի, Վալենտին (1745–1822), ֆրանսիացի մանկավարժ, տիֆլոմանկավարժության հիմնադիրներից: Ստեղծել է պարզեցված տառերով ուռուցիկ տառատեսակ, դրանցով տպագրության և նամակագրության տեխնիկա, կույրերի համար տպագրել աշխարհագր. քարտեզներ և ուռուցիկ նկարներ: Աշակել է կույր երեխաների ուսուցման տեսություն և մեթոդիկա: 1784-ին իր միջոցներով Փարիզում հիմնադրել է կույրերի 1-ին դպրոցը:

ՀԱՅՈՒՀՅԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, հայ կանանց և օրիորդների ընկ-յուն: Հիմնադրվել է 1882-ի մարտին Թիֆլիսում: Հ. բ. ը-յան միջոցներով Թիֆլիսում գործել են 10 ծխական դպրոցներ, 1 մանկապարտեզ ևն: 1907-ից Հ. բ. ը. կոչվել է Կովկասյան: Լուծարվել է 1921-ի գարնանը՝ Վրաստանի խորհրդայնացումից հետո:

«ՀԱՅՔ», ազգ., գր., քաղ. կիսամսյա հանդես (1891–98, Նյու Յորք): Տնօրեն-խմբ.՝ Սմբատ *Գաբրիելյան*:

«ՀԱՅՔ», հաս–քաղ. պարբերաթերթ (1989–99, 2006–10, Երևան): ՀՀՇ պաշտո-

նաթերթ: Խմբ-ներ՝ Սամվել Գևորգյան, Վասակ Դարբինյան, Անտոն Պեպանյան, Հասմիկ Պողոսյան, Վարդգես Դավթյան, Տիգրան Հակոբյան, Գեղամ Նազարյան:

ՀԱՅՖԱ (Haifa), ք. Իսրայելում, երկրի գլխ. նվ.ինգստ-ը Միջերկր. ծովի ափին: Բն.՝ 272 հզ. (2012):

ՀԱՅՖԻԼՀԱՐՄՈՆԻԱ պետական, երաժշտահամերգ. կազմ-յուն: Գործել է 1932–91-ին (1976–89-ին՝ Հայհամերգ) և 1996-ից Երևանում: Նպատակն ազգ. և համաշխ. դաս. ու արդի երաժշտ. ստեղծագործությունների և կատարող. արվ-ի տարածումն է: 1930-ական թթ-ին հիմնադրված երաժշտ. կոլեկտիվները միավորվել են Հ-ի մեջ: ՀԽՍՀ-ից դուրս նրանց 1-ին ելույթները 1939-ին էին Մոսկվայում՝ Հայաստանի արվ-ի և գրկ-յան 1-ին տասնօրյակի օրերին: Հ. նախաձեռնել և կազմակերպել է «Անդրկովկասի երաժշտական գարուն» (1957), «Կամերային երաժշտություն» (1970-ից), «Երևանյան աշուն» (1976), «Ոսկե աշուն» (1959–94, 1999), «Էրեբունի-Երևան» (1982-ից), «Համահայկական խաղեր» (1999-ից) փառատոներ, երաժշտության տասնօրյակներ, ստուգատեսներ, մրցույթներ: ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան (1956):

ՀԱՅՖԻԼՄ Համո Բեկնազարյանի անվան (1966-ից), Հայաստանի 1-ին կինոստուդիան: Հիմնադրվել է 1923-ին Երևանում (մինչև 1928-ը՝ կինոֆաբրիկա, ապա՝ Հայկինո, 1938-ից՝ Երևանի կինոստուդիա, 1957-ից՝ Հ., 2006-ից՝ Հայաստանի ազգ. կինոկենտրոն): Թողարկում է գեղ. [«Նամուս» (1925, 1-ին գեղ. ֆիլմը), «Զարե», «Շոր և Շորշոր» (երկուսն էլ՝ 1927, երեքն էլ՝ ռեժ.՝ Հ. Բեկնազարյան, համր), «Պեպո» (1935, ռեժ.՝ Հ. Բեկնազարյան, 1-ին հնչուն ֆիլմը), «Պատվի համար» (1956, ռեժ.՝ Ա. Հայ-Արտյան), «Բարև, ես եմ» (1965), «Երկունք» (1977, երկուսն էլ՝ ռեժ.՝ Ֆ. Դովլաթյան), «Նահապետ» (ըստ Հ. Քոչարի, 1977), «Կտոր մը երկինք» (ըստ Վ. Թոթովենցի, 1980, երկուսն էլ՝ ռեժ.՝ Հ. Մալյան), «Հին օրերի երգը» (1982), «Մեր մանկության տանգոն» (1985), «Ուրախ ավտոբուս» (1988, երեքն էլ՝ ռեժ.՝ Ա. Մկրտչյան), «Երջանկության մեխանիկա» (1982, ռեժ.՝ Ն. Հովհաննիսյան), «Զայն բարբառոյ...» (1991, ռեժ.՝ Վ. Չալդրանյան), «Ընկեր Փանջունի» (ըստ Ե. Օտյանի, 1993, ռեժ.՝ Ա. Մանարյան) ևն], վավերագր. («Վերադարձ», 1932, «Հայաստանի քարերը», 1968, «Բնությունը մեր մեջ», 1983, «Արցախ. E = mc^2», 1988, «Կյանք», 1993, ևն), մուլտ. ֆիլմեր, կատարում կրկնօրինակումներ: 1988-ից Հ-ում գործել է Մուլտիպլիկացիոն կինոնկարների ստեղծագործ. միավորումը (տես *Մուլտիպլիկացիոն կինո*): Հ-ում ստեղծվել է «Բումերանգ» (1983–93) երգիծ. կինոհանդեսը:

ՀԱՅՖՈՆ (Hai Phong), ք. Վիետնամի հս-արլ-ում՝ Հվ-չին. ծովի Բակբո ծոցի ափին: Կենտր. ենթակայության առանձնահատուկ վարչ. միավոր է: Բն.՝ 2 մլն (2014): Երկրի առևտրաարդ. կենտրոն է: Զարգացած են ցեմենտի, ապակու, տեքստիլ, սննդամի արդ-յան ճյուղերը, ձկնաբուծությունը, կան նավաշին., նավամեքենանորոգման ձեռն-ներ, ավանդ. արհեստագործություն:

ՀԱՆ, 1. կայսեր. հարստություն Չինաստանում՝ մ. թ. ա. 206–մ. թ. 220-ին: Հիմնադրել է *Լյու Բանը*: Վարել է նվաճող. պատերազմներ՝ ընդարձակելով կայսրության սահմանները: Առևտր. և մշակութ. կապեր են հաստատել Միջին Ասիայի երկրների և Հնդկաստանի հետ: 2. Չինացիների ինքնանվանումը:

ՀԱՆ (Hahn) Օտտո (1879–1968), գերմանացի ճառագայթաքիմիկոս: Հայտնագործել է պրոտակտինիումը (Լ. Մայտների հետ), բնական ճառագայթաակտիվ տարրերի միջուկ. իզոմերիան, ուրանի միջուկի տրոհումը՝ նեյտրոնների ազդեցությամբ (1938): Նոբելյան մրց. (1944, ֆ. *Շտրասմանի* հետ):

ՀԱՆ ՅՈՒՅ (768–824), չին մտածող, կոնֆուցիական, գրականագետ: Չին գրկ-յան մեջ, այսպես կոչված, «վերադարձ հնության» շարժման նախաձեռնողներից:

ՀԱՆԳԱՆ, գետ Կորեայի Հանրապետությունում: Սկիզբ է առնում Տհերեկ բարձրավանդակի լ-ճյուղերից և թափվում Դեղին ծովի Կանհվաման ծոց: Երկ.՝ 514 *կմ*, ավազանը՝ 34, 5 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ մոտ 670 *մ*^{3}/*վ*:

ՀԱՆԳՍՏԻ ՋԱՆԳՎԱԾ, ֆիզ. մասնիկի զանգվածը *հաշվարկման համակարգում*, որտեղ այդ մասնիկը հանգստի վիճակում է:

ՀԱՆԳՍՏԻ ԷՆԵՐԳԻԱ, ֆիզ. մարմնի կամ մասնիկի էներգիան *հաշվարկման համակարգում*, որտեղ դրանք հանգստի վիճակում են: Արտահայտվում է $E_0 = m_0c^2$ բանաձևով, որտեղ m_0-ն մարմնի կամ մասնիկի հանգստի զանգվածն է, c-ն՝ լույսի արագությունը վակուումում:

ՀԱՆԳՈՒՅՑ, 1. մեքենայի, մեխանիզմի, կայանքի ևնի մաս, որը բաղկացած է մի քանի ավելի պարզ տարրերից (դետալներից): 2. Գործառնությամբ իրար կապված շինություններ, մեքենաներ կամ այլ սարքավորումներ (օր.՝ հիդրոհանգույց, ռադիոհանգույց): 3. Երկթղ. մի քանի գծերի հատման տեղ (երկթղ. Հ.): 4. Էլ. շղթայի ճյուղերի միացման կետ: 5. Մեկ կամ մի քանի սրահներ, որտեղ տեղակայված են սան. սարքերը (սան. Հ.): 6. Շին. կրող կառուցվածքներում իրար նկատմամբ անկյան տակ տեղակայված մի քանի ձողերի և այլ տարրերի միացման տեղ (կետ): 7. Ավտոմոբիլ. ճանապարհների մի քանի մայրուղիների միացման տեղ (ճանապարհ. Հ.): 8. (Նավագնացություն) նավի հավասարաչափ արագության արտահամակարգ. միավոր. համապատասխանում է այն արագությանը, երբ նավը 1 *ժ*-ում անցնում է 1 *մղոն* ճանապարհ. 1 Հ = 1 *մղոն*/*ժ* = 1,852 *կմ*/*ժ* (0,514 *մ*/*վ*): 9. (Ուղեծրի Հ., աստղ.) այն կետը, որտեղ մի ուղեծիր հատում է մյուսին: Ավելի հաճախ՝ ուղեծրի տրամագծորեն հակառակ 2 կետերից մեկը, որտեղ որևէ երկնմ. մարմնի (մոլորակի կամ գիսավորի) ուղեծր. հարթությունը հատում է հիմն. կոօրդինատ. խավարածրի հարթությունը կամ այն երկր. մարմնի ուղեծիրը, որի շուրջ պտտվում է: 10. (Անատոմիա) մարմնի օրգանի կամ հյուսվածքի հաստացում, օր.՝ ավշային Հ. կամ նյարդ. հյուսվածքի սինուս-նախասրտային Հ., որը կարգավորում է սրտի ռիթմը: 11. Բույսերի Հ., ընձյուղի առանցքի մաս, որի վրա գոյանում են տերևը, բողբոջը, երբեմն՝ նաև հավելյալ արմատները: Ըստ Հ-ների հեռ-յան՝ տարբերում են կարճացած և երկարացած ընձյուղներ: Բույսերի ընձյուղի Հ-ի կազմությունը կարգաբան. հատկանիշ է: 12. (Ֆիզ.) նվազագույն տեղափոխության (զրոյական ամպլիտուդի) կետերը կանգուն ալիքների վրա, օր.՝ անշարժ կետերը տատանվող լարի վրա:

ՀԱՆԳՈՒՅԱՎՈՐ ԷՐԻԹԵՄԱ, վարակալերգ. հիվանդությունների մաշկ. դրսևորումներ: Բնորոշվում են մաշկի վրա բարձրացող պինդ, կարմիր հանգույցների (մի քանի *սմ* տրամագծով) առաջացմամբ, առավել հաճախ՝ սրունքների վրա:

ՀԱՆԴԱՆ (Handan), ք. Չինաստանի Հեբեյ պրովինցիայում, Ֆույանհե գետի ափին: Բն.՝ 9,2 մլն (2010): Կան տեքստիլ, սննդի, մետաղաձուլ., մեքենաշին. և այլ ձեռնարկներ: Մոտակայքում արդյունահանվում է քարածուխ և երկաթաքար:

ՀԱՆԴԱՐՏ ԷՅՐԵՆԻՍ (Eirenis modestus), լորտուների ընտանիքի էյրենիս ցեղի օձ: ՀՀ-ում հանդիպում է ոչ շատ բարձր լեռներում, Երևանի շրջակայքում: Ապրում է չոր տափաստան., թփուտ. ու նոսրանտառ. բուսականությամբ քարքարոտ կենսավայրերում:

ՀԱՆԴԵՍ, տպագիր պարբ. հրտ-յուն: Ըստ պարբերականության՝ լինում են ամսօրյա, շաբաթ., տասնօրյա, երկշաբաթյա, երկամսյա, եռամսյա, կիսամյա, ըստ բովանդակության՝ հաս-քաղ., գր-գեղ., արտադր-տեխ., գիտաճյուղ., գիտահանրամատչելի, գիտատեղեկատու, մատենագիտ., երգիծ., մարզ., բազմաբնույթ:

ՀԱՆԴԵՐՁՅԱԼ ԱՇԽԱՐՀ, ըստ կրոնադից. պատկերացումների՝ երևակայական աշխարհ, որտեղ շարունակվում է մարդկանց կյանքը նրանց մահից հետո: Պատմ. զարգացման ընթացքում Հ. ա. յուրովի է մեկնաբանվել. հին եգիպտացիների համար երկր. կյանքը միջոց էր ապագա կյանքի համար (այստեղից էլ՝ մահացածների մումիացումը և պաշտամունքը), հուն. մշակույթում անհատը դիտվել է որպես իրական աշխարհում գործող հաս-քաղ էակ, այդ պատճառով Հ. ա. համարվել է «ստվերների թագավորություն»: Հին հայերի պատկերացմամբ՝ մարդու մահից հետո հոգին անջատվում է մարմնից և շարունակում իր կյանքը:

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ», հայագիտ. հանդես (1887–ից, Վիեննա), ՄՄ պաշտոն. հրտ-յուն: Հիմնադիր՝ Արսեն Այտընյան, խմբ-ներ՝ Ղևոնդ Հովնանյան, Գրիգորիս Գալեմքյարյան, Գաբրիել Մենևիշյան, Հակոբոս Տաշյան, Թովմաս Կետիկյան, Ներսես Ակինյան, Համազասպ Ոսկյան, Արիստակես Վարդանյան, Օգոստինոս Սեբուլյան, Պողոս Գոճանյան և ուր.: «Հ. ա.»-ում տպագրված նյութերի զգալի մասը հրատարակվել է առանձին գրքերով՝ «Ազգային մատենադարան» մատենաշարով (ավելի քան 240 հատոր):

«ՀԱՆԴԷՍ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ», տարեգիրք (1888–90, 1894–96, Մոսկվա): Խմբ.՝ Մկրտիչ Բարխուդարյան:

«ՀԱՆԴԷՍ ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ» ("Zeitschrift für armenische Philologie"), պատմության, լեզվաբ-յան, ազգագրության գիտ. հանդես [1901–02, Մարբուրգ (Գերմանիա), խմբագրվել է Թիֆլիսում, 2 գիրք՝ հայ., գերմ.]: Խմբ-հրտ-ներ՝ Ֆրանց Ֆինկ (պատ. խմբ.), Եզնիկ վրդ. Գյանջեցյան, Հակոբ Մանանդյան և Աբգար Հովհաննիսյան:

«ՀԱՆԴԷՍ ՄՇԱԿՈՒՅԹԻ», գր-գեղ. և բանասիր. հանդես (1948–67, Ստամբուլ): Կ. Պոլսի Կեդրոն. սանուց միության հրտ-յուն: Խմբ-ներ՝ Հայկ Գալանտերյան, Կարապետ Գզիրյան, Վարդան Կոմիկյան:

ՀԱՆԴԻՊԱԿԱՆ ՓՆՋԵՐ (ֆիզ.), տարր. մասնիկների հետազոտման փորձառ.

մեթոդ, որտեղ էլ. դաշտում արագացված լիցքավորված մասնիկների (էլեկտրոն, պրոտոն, պոզիտրոն ևն) 2 փունջ շարժվում է դեմ հանդիման և փոխազդում է հանդիպման տարածքում: Հ. փ–ով արագացուցիչը կոչվում է ***կոլայդեր***:

ՀԱՆԴԿԵ (Handke) Պետեր (ծ. 1942), ավստրիացի գրող: «Չկան ցանկություններ, չկա երջանկություն», «Կարճ նամակ երկարատև բաժանումից առաջ» (երկուսն էլ՝ 1972) վիպակներում, «Դոն Ժուան (պատմում է ինքը)» (2004) պատմվածքում բացահայտել է ժամանակակից աշխարհում մարդու խորթացման խնդիրը: Հեղինակ է նաև «Ճախրանքի ավարտը» (1977), «Շարունակելի բանաստեղծություններ» (1986), «Կյանքն առանց պոեզիայի» (2007) բանաստեղծությունների ժող–ների, նաև էսսեների, թարգմ–յունների: Հայ. հրատարակվել են «Ճակատագրական դժբախտություն» (2004), «Դարպասապահի վախը տասնմեկմետրանոցի ժամանակ» (2005), «Դանդաղ վերադարձ տուն» (2015) գործերը:

ՀԱՆԵԼՈՒԿ, ժող. բանահյուսության ժանր. առարկան (երևույթը) նկարագրում է այլաբանորեն (տես ***Այլաբանություն***): Ունի 2 բաղադրիչ՝ բանաձև և լուծման առարկա: Հ–ի ինազույն նմուշներ պահպանվել են Աստվածաշնչում, Ռիգվեդայում, գրավոր ու բանավոր այլ աղբյուրներում: Հայ մատենագրության մեջ վկայված է VII դ–ից: Հայտնի են ***Ներսես Շնորհալու*** Հ–ները, որոնցով էլ այն, որպես ժանր, մտել է հայ գրկ–յան մեջ:

ՀԱՆԵՄԱՆ (Hahneman) Սամուել (1755–1843), գերմանացի բժիշկ, ***հոմեոթերապիայի*** հիմնադիրը: Հանգես է եկել արյուն թողնելու, ործկացնող և այլ միջոցների չարաշահման դեմ:

ՀԱՆԵՍՕՂԼՅԱՆ Գևորգ Սարիբեկի (1891–1937), կուս., պետ. գործիչ: 1930–31–ին՝ ՀԽՍՀ ԺՏԽ նախագահ, 1932–33–ին՝ ֆինանսների ժողկոմ, 1933–34–ին՝ ՀԱՄԽ–ի նախագահ, 1936–ից՝ ՀԽՍՀ ԿԳԿ նախագահ: Անհիմն բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ՀԱՆԹ (Hunt) Թիմոթի (ծ. 1943), անգլիացի կենսաքիմիկոս: Աշխ–ները վերաբերում են բջջի կիսման կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությանը: Հայտնաբերել և նկարագրել է ցիկլինները՝ ոչ մեծ սպիտակուցներ, որոնց պրոտեինկինազ ֆերմենտի հետ կոմպլեքսներն սկսում են այդ շարժընթացը: Նորելյան մրց. (2001, Պ. ***Ներսի*** և Լ. ***Հարթուելի*** հետ):

ՀԱՆԹ Ջեյմս Հենրի Լի (1784–1859), անգլիացի գրող: Հեղինակ է «Բանաստեղծների խրախճանքը» (1814), «Ռիմինիի պատմությունը» (1816) պոեմների, XVI–XVIII դդ–ի թատրոնի պատմությանը վերաբերող տես. աշխ–ների, որոնք առնչվում են ռեալիզմին: Բարքերը նկարագրող էսսեները սկզբնավորել են Չ. Դիքենսի ռեալիզմը:

ՀԱՆԹԵՐ (Hunter), անգլիացի բժիշկ և անատոմ եղբայրներ: 1. **Ուիլյամ Հ.** (1718–1783), աշխ–ները վերաբերում են արգանդի անատոմիային և ֆիզիոլոգիային՝ հղիության տարբեր շրջաններում: Առաջարկել է շնչերակի անևրիզմի բուժման վիրաբուժ. եղանակ: 2. **Ջոն Հ.** (1728–1793), փորձարար. ախտաբանության, վիրաբուժության մեջ անատոմաֆիզիոլոգ. ուղղության և գիտ. դպրոցների հիմնադիր: Նկարագրել է կարծր շանկրի (1786) բնածին և ձեռքբերովի ճողվածքների տարբերությունը:

ՀԱՆԹԻՆԳՏՈՆ (Huntington) Էլսուորթ (1876–1947), ամերիկացի աշխարհագետ, աշխարհաքաղ–յան կողմնակից: Աշխ–ներում («Քաղաքակրթությունը և կլիման», 1915, «Քաղաքակրթության շարժիչ ուժը», 1945) եվրոպ. մշակույթի և «սպիտակ ռասայի» տիրապետող դերը հիմնավորել է բնական պայմաններով (հիմնականում՝ կլիմայով):

ՀԱՆԹԻՆԳՏՈՆ Ջորջ (1850–1916), ամերիկացի բժիշկ: Նկարագրել է (1872) գլխուղեղի ժառանգ. քրոնիկ. հիվանդությունը, որը կոչվում է Հ–ի **քորեյա**, Հ–ի ախտանիշ:

ՀԱՆԹԻՆԳՏՈՆ ԲԻՉ, ք. ԱՄՆ Կալիֆոռնիայի նահգ–ում՝ Խաղաղ օվկ–ի ափին: Կլիմ. առողջարան է: Բն.՝ 194, 4 հգ. (2006):

ՀԱՆԹ–ՄԱՆ (Huntsman) Բենջամին (1704–1776), անգլիացի մետաղագետ: Եվրոպայում վերականգնել է (1740) հալքանոթներում ձուլածո պողպատի ստացման (հալքանոթ. հալում) հինավուրց եղանակը:

ՀԱՆԹՍՎԻԼ (Huntsville), ք. ԱՄՆ Ալաբամա նահգ–ում, Մեդիսոն օկրուգի կենտրոնը: Բն.՝ 186 հգ. (2010): Հ–ում է ԱՄՆ տիեզ. թռիչքների կառավարման (ՆԱՍԱ) կենտրոնը: Կան հրթիռաշինության, քիմ. արդ–յան ձեռն–ներ, համալսարան:

ՀԱՆԻ, ժողդ Չինաստանում և Հնդկաչինի երկրներում: Ընդհ. թիվը՝ 1,5 մլն (2000): Լեզուն՝ հանի:

ՀԱՆՆԻԲԱԼ (Hannibal) Բարկա (մ. թ. ա. 247/246–183), Կարթագենի ռազմ. և պետ. գործիչ: ***Համիլկար Բարկայի*** որդին: Պունիկյան 2–րդ պատերազմի ընթացքում (մ. թ. ա. 218–201) անցել է Ալպյան լ–ներով, հաղթանակներ տարել Տիկինոս, Տրեբիա գետերի ափին (218), Տրազիմենուս լճի մոտ (217), իսկ Կաննեի մոտ (217) գլխովին ջախջախել է հռոմ. բանակը: 202–ին Զամայի մոտ (Հս. Աֆրիկա) պարտվել է և ընդունել հռոմեացիների պարտադրած հաշտությունը:

ՀԱՆՆՈՆ ՄԵԾ (Hannon), Լիբիայի կուսակալ Կարթագենում՝ մ. թ. ա. 240–ին: ***Համիլկար Բարկայի*** և ***Հաննիբալի*** քաղ. հակառակորդը, Պունիկյան 2–րդ պատերազմի տարիներին՝ Հռոմին հանձնվելու (կապիտուլյացիայի) կողմնակից:

ՀԱՆՇՈՒՅ, գետ Չինաստանի արլ–ում: Յանցզիի ձախ վտակը: Երկ.՝ 1532 կմ, ավազանը՝ մոտ 174 հգ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 2 հգ. *մ*^{3}/*վ*: Նավարկելի է: Ափին է Ուհան ք–ը:

ՀԱՆՈՅ (Há Nõi), Վիետնամի մայրաքաղաքը: Երկրի տնտ. և մշակութ. հիմն. կենտրոնը, նվինգստ՝ Հոնգհա գետի ափին: Կենտր. ենթակայության հատուկ վարչ. միավոր է: Բն.՝ 6,5 մլն (2009): Ունի միջազգ. օդանավակայան (Նոյբայ), նախանվինգստ՝ Հայֆոն: Զարգացած են մեքենաշինությունը և մետաղամշակությունը, տեքստիլ, փայտամշակման, կաշվի, սննդամի, քիմ. արդ–յան ճյուղերը: Գործում են բազմաթիվ բուհեր, համալսարան, ԳՀԻ–ներ, թատրոններ, թանգարաններ, բուսաբ. այգիներ: Պատմամշարտ. հուշարձաններից են՝ 1 սյան վրա կառուցված Դիեն Բո պագոդան (Մոր Կոր, 1049), Չինգ 2 քույրերի, Չանվու, Գրկ–յան (Կոնֆուցիոսին նվիրված) տաճարները, Հո Շին Մինի դամբարանը: Հիմնադրվել է V (այլ տվյալներով՝ VIII) դ–ում: XI դ–ից՝ վիետնամ. պետությունների մայրաքաղաքը, XIX դ–ից՝ Վիետնամի հս. մասի գլխ. քաղաքը: 1902–45–ին՝ Ֆրանս. Հնդկաչինի, 1945–76–ին՝ ՎԴՀ (Հս. Վիետնամ), 1976–ից՝ Վիետնամի Սոց. Հանրապետության մայրաքաղաքը:

ՀԱՆՈՎԵՐ, ք–նվինգստ Գերմանիայում, Ներքին Սաքսոնիա երկրի վարչ. կենտրոնը: Բն.՝ 518 հգ. (2013): Զարգացած են տրանսպորտ., գղտ. և էլեկտրատեխ. մեքենաշինությունը, գոնավոր մետաղագործությունը, սննդի, թեթև արդ–յան ճյուղերը: Գործում են մետրո, օպեր. թատրոն, համալսարան, երաժշտության և թատրոնի ակադ–ներ, թանգարաններ ևն: Հայտնի է XII դ–ից, որպես քաղաք՝ 1241–ից:

ՀԱՆՉԺՈՈՒ, ք. Չինաստանում, Չժեցզյան նահգ–ի վարչ. կենտրոնը: Խոշոր նվինգստ է Արևելաչին. ծովափին: Բն.՝ 7,8 մլն (2010): Մետաքսի, թղթի, էլեկտրոն. և ռետինի արդ–յան, ջուտի արտադր–յան, թեյի մշակման կարևոր կենտրոն է: Ունի համալսարան: Հիմնադրվել է 589–ին:

ՀԱՆՉԺՈՈՒՎԱՆ, ծոց Արևելաչին. ծովում՝ Չինաստանի ափերի մոտ: Երկ.՝ 150 *կմ*, լայն. մուտքի մոտ՝ 110 *կմ*, խոր.՝ մինչև 13 մ: Մուտքի մոտ է Չժոուշան կղզեխումբը: Հ. է թափվում Ֆուչունցզյան գետը: Նվինգստ–ը՝ Հանչժոու:

ՀԱՆՆ ԱԴԱՄ II (Hans Adam, ծ. 1945), Լիխտենշտեյնի իշխան՝ 1989–2004–ին: 2004–ին երկրի կառավարումը պաշտոնապես հանձնել է որդուն՝ գահաժառանգ Ալոիսին (ծ. 1968):

ՀԱՆՍԵՆ (Hansen) Գերհարդ (1841–1912), նորվեգացի բժիշկ: Բացահայտել է (1871) բորի հարուցիչը և հերքել նրա ժառանգաբար փոխանցումը:

ՀԱՆՍԵՆ (Hensen) Լարս Փեթեր (ծ. 1952) ամերիկացի տնտեսագետ: ԱՄՆ ԳԱԱ անդամ (1999): Պահերի (մոմենտների) ընդհանրացված մեթոդի ստեղծողներից:

Նորելյան մրց. (2013, Յ. ***Ֆամայի*** և Ռ. ***Շիլլերի*** հետ):

ՀԱՆՍՈՆ (Hansson) Պեռ Ալբին (1885–1946), շվեդ քաղ., պետ. գործիչ: Շվեդիայի վարչապետ՝ 1932–36 և 1936–46–ին: 1925–46–ին՝ Ս–դ. բանվ. կուս–յան նախագահ:

«ՀԱՆԲԱԳԻՏԱԿ», հաս–քաղ., գրկ–յան, արվ–ի, գիտ. շաբաթաթերթ (1896–1908, Կ. Պոլիս): Խմբ–ներ՝ Արմեն Լուսինյան, Ղազար Բոլատ, Երվանդ Տեր–Մինասյան, Բյուզանդ Պոզաճյան, Վահան Փափազյան, Մ. Պապոյան:

ՀԱՆԲԱԳԻՏԱԿՆԵՐ, Էնցիկլոպեդիստներ, ֆրանսիացի լուսավորիչ–հեղինակներ, որոնք Դ. ***Դիդրոյի*** գլխավորությամբ մասնակցել են «Հանրագիտարան կամ գիտությունների, արվեստների և արհեստների բացատրական բառարանի» (հ. 1–35, 1751–80) ստեղծմանը: Առավել հայտնի են Ժան դ'Ալամբերը, Ժ. Բյուֆոնը, Վոլտերը, Կ. Հելվեցիուսը, Պ. Հոլբախը, Լ. դը Ժոկուրը, Է. Կոնդիլյակը, Ժ–Ժ. Ռուսոն և ուր.:

ՀԱՆԲԱԳԻՏԱՐԱՆ, գիտ. կամ գիտահանրամատչելի հրտ., տարբեր ոլորտների գիտելիքի և կիրառ. նշանակության համակարգված տեղեկությունների համահավաք: Ըստ կառուցվածքի՝ լինում են այբբեն., թեմատիկ և այբբեն–թեմատիկ, ըստ նյութերի ընդգրկման առանձնահատկության՝ համապիտանի, ճյուղային, տարածաշրջ., անձնանունների, մանկ., ըստ ծավալի՝ մեծ (մի քանի տասնյակ հատորներով), փոքր (10–12 հ.), համառոտ (4–6 հ.) և հանրագիտ. բառարաններ (1–3

հ.): Տես նաև «*Հայկական հանրագիտարան. հրատարակչություն*»:

ՀԱՆՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, 1. **պազիգրաֆիա** (< հուն. pas – համընդհանուր և *...գրաֆիա*), նշանների համակարգ առանց հնչյուն. ձևի՝ տարբեր լեզուներով խոսող մարդկանց գրավոր հաղորդակցումն ապահովելու համար: Գաղափարն առաջարկել է շոտլանդացի Ջորջ Դալգառնոն՝ իր «Նշանակումների արվեստ, հանրաճանաչ համապիտանի բնութագրեր և փիլիսոփայական լեզու» (1661) աշխ-յան մեջ: «Պազիգրաֆիա» եզրույթն առաջինն օգտագործել է Ժոզեֆ դը Մեմիռն (1797): Հայ իրականության մեջ Հ–ով զբաղվել են Ա. Տիրոյանը («Հանրագրութիւն որ է համազգային գրութեան նոր ոճ մը», 1907) և ուր.: 2. **Հանրագիր**, ողջ ազգաբնակչության կամ նրա մի մասի (որևէ խավի) ձեռքով կազմված գրություն՝ դիմում, շնորհակալություն, բողոք ևն:

ՀԱՆՐԱԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գիտակարգ, միջճյուղ. համակարգ. ուսումնասիրում է լեզվի հաս. բնույթի, գործառության, լեզվականի ու հասարակականի փոխազդեցության, լեզվաշինության, երկլեզվության ու բազմալեզվության և այլ խնդիրներ:

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ, ընդհ. կրթություն տվող պետ., հաս. կամ մասնավոր դպրոց: ՀՀ–ում 2006–07 ուս. տարվանից ներդրվել է 12–ամյա ընդհ. միջնակարգ կրթություն (նախկին 10–ամյակի փոխարեն)՝ եռաստիճան համակարգով՝ տարր. (I–IV դասարան), միջին (V–IX դասարան) և ավագ (X–XII դասարան) դպրոցներով. տարր. և միջին դպրոցները կազմում են հիմն. դպրոցը: ՀՀ–ում ընդհ. կրթությունն սկսվում է 6 տարեկանից, հիմն. ընդհ. կրթությունը պարտադիր է:

ՀԱՆՐԱՀԱՇԻՎ, մաթ–ի բաժին. ուսումնասիրում է ***հանրահաշվական գործողությունների*** ընդհ. հատկությունները: Զարգացել է ***հանրահաշվական հավասարումների*** լուծման հետ: Ժամանակակից Հ–ում ուսումնասիրում են համախմբերի ընդհ. տեսությունը, որտեղ կատարվող հանրահաշվ. գործողություններն իրենց հատկություններով նույնն են, ինչ թվերով կատարվող գործողությունները: Ժամանակակից Հ. զարգանում է խմբերի, օղակների և մոդուլների, Կավարի, ունիվերսալ հանրահաշիվների և մոդուլների տեսությունների ուղղություններով:

ՀԱՆՐԱՀԱՇՎԱԿԱՆ ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ, *երկրաչափության* բաժին. ուսումնասիրում է ***հանրահաշվական կորերը*** (մակերևույթներ) և նրանց բազմաչափ ընդհանրացումները՝ հանրահաշվ. բազմաձևությունները:

ՀԱՆՐԱՀԱՇՎԱԿԱՆ ԹԻՎ, ամբողջ գործակցով ***հանրահաշվական հավասարմանը*** բավարարող թիվ: Այն թվերը, որոնք հանրահաշվական չեն, կոչվում են ***տրանսցենդենտ թվեր***:

ՀԱՆՐԱՀԱՇՎԱԿԱՆ ԿՈՐ, **մակերևույթ**, ***հանրահաշվական հավասարումներով*** արտահայտվող կոր (մակերևույթ) *դեկարտյան կոորդինատներում*:

ՀԱՆՐԱՀԱՇՎԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐՈՒՄ, հավասարում, որն ստացվում է 2 հանրահաշվ. արտահայտություններն իրար հավասարեցնելով: Օր.՝

$$x^2 + xy + y^2 = x + 1.$$

մեկ անհայտով յուրաքանչյուր Հ. հ. կարելի է առանց արմատների կորստի ձևափոխել $a_o + a_1x + \dots a_nx^n = 0$–ի:

ՀԱՆՐԱՀԱՇՎԱԿԱՆ ՏՈՊՈԼՈԳԻԱ, մաթ–ի բնագավառ, որտեղ հանրահաշվ. հասկացությունների և մեթոդների օգնությամբ ուսումնասիրում են երկրչփ. պատկերների այնպիսի հատկություններ, որոնք անփոփոխ են մնում ***հոմոտոպիաների*** (անընդհատ ձևախախտումների) ժամանակ:

ՀԱՆՐԱՀԱՇՎԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱ, ֆունկցիա, որը բավարարում է

$$a_ox^n + a_ix^{n-1} + \dots a^n = 0$$

տեսքի ***հանրահաշվական հավասարման***, որտեղ a_i–ները մեկ փոփոխականի բազմանդամներ են: Այն ֆունկցիաները, որոնք հանրահաշվական չեն, կոչվում են ***տրանսցենդենտ ֆունկցիաներ***:

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ, պետ. մարմինների կառուցվածքն ու գործունեությունը սահմանող, դրանց և քաղաքացիների միջև ձևավորված հարաբերությունները կարգավորող նորմերի համակցություն իրավունքի տեսության մեջ:

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ», քաղծառայության տեղեկատու շաբաթաթերթ (2003–ից, Երևանում, մինչև 2013–ը՝ «Քաղաքացիական ծառայություն»): ՀՀ Պետ. կառավարման ակադ–ի հրտ–յուն: Խմբ–ներ՝ Լավրենտի Միրզոյան, Լարիսա Հովհաննիսյան (2004–ից):

«ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ», գիտ. եռամսյա հանդես (2004–ից, Երևան՝ հայ., ռուս., անգլ.): ՀՀ Պետ. կառավարման ակադ–ի հրտ–յուն: Խմբ–ներ՝ Արմեն Հարությունյան, Հովհաննես Հարությունյան, Արսեն Լոքյան (2011–ից):

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», հաս–քաղ. ամսագիր (2003–ից, Երևան): ՀՀԿ պաշտոն. հրտ–յուն: Հիմնադիր–խմբ.՝ Մուշեղ Լալայան:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԲԺՇԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, հիմնադրվել է 1939–ին Երևանում: ՀՀ–ում բժշկության ոլորտի մատենագիտ., գրադարան., տեղեկատվ. ծառայությունների հիմն. կենտրոնն է: Հավաքածուն ներառում է ավելի քան 0,5 մլն միավոր: 2016–ից՝ ՀԱԳ–ի կազմում:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, հիմնադրվել է 1957–ին Երևանում: Հավաքածուն ներառում է 22 մլն միավոր: 2016–ից՝ ՀԱԳ–ի կազմում:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՄՆ–ի, երկու (Դեմոկրատականի հետ) հիմն. կուս–յուններից մեկը երկրում: 2–րդ անվանումը՝ Հին մեծ կուս–յուն (Grand Old Party, GOP) Ստեղծվել է 1854–ին: Ղեկավարել է երկիրը 1861–85, 1889–93, 1897–1913, 1921–33, 1953–61, 1969–77, 1981–93 և 2001–09–ին: 2009–ին կուս–յան նոր առաջնորդ է ընտրվել Մայքլ Սթիլը: 2010–ին ստացել է Ներկայացուցիչների պալատի վերահսկողությունը, 2014–ին՝ նաև Սենատի: Կուս–յան գաղափարախոսներից են եղել Լեո Շտրաուսը, Աբրահամ Լինքոլնը, Թոմաս Սոուելը: Վերջին նախագահները՝ Ռ. Ռեյգան (1981–89), Ջ. Հ. Ու. Բուշ (1989–93), Ջ. Ու. Բուշ (2001–09), Դ. Թրամփ (2017–ից):

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ Երևանի, քաղաքի վարչ. կենտրոնի գլխ. ճարտ. համալիրը, տոնակատարությունների, շքերթների, ժող. հավաքույթների կենտրոնատեղին: Ստեղծվել է ըստ Երևան ք–ի գլխ. հատակագծի (1924, ճարտ.՝ Ալեքսանդր *Թամանյան*), կառուցապատվել 1926–58–ին (թանգարանների շենքն ավարտվել է 1977–ին): 1940–90–ին՝ Լենինի հրապարակ (Վ. Ի. Լենինի արձանով, հեղինակ՝ Սերգեյ *Մերկուրով*): Հ. հ. ընդգրկում է Կառավար. տունը (ճարտ.՝ Ա. Թամանյան), Կառավար. 2–րդ տունը (ճարտ–ներ՝ Սամվել *Սաֆարյան*, Վարազդատ Արևշատյան), «Արմենիա» հյուրանոցը, Արհմիությունների տան, թանգարանների շենքերը (երեքն էլ ճարտ–ներ՝ Սարկ *Գրիգորյան*, Էդուարդ *Սարապյան*): Համալիրի գեղագիտ. արտահայտչականությունն ամբողջացնում է խոշոր ջրավազանը՝ իր շատրվաններով:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ, պետության ղեկ–ը՝ հանրապետ. վարչաձևով կառավարվող երկրներում: Հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատ. իշխանությունների գործունեությունը, հանրապետության անկախության, տարածք. ամբողջականության և անվտանգության երաշխավորն է (ՀՀ Սահմանադրություն, գլուխ 3, հոդված 49): ՀՀ–ում ընտրվել են ուղղակի ընտրություններով. նախագահներ են եղել Լևոն Տեր–Պետրոսյանը (1991–98), Ռոբերտ Քոչարյանը (1998–2008), Սերժ Սարգսյանը (2008–18) և Արմեն Սարգսյանը (2018–ից):

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, կառավարման համակարգ, երբ երկրում իշխանությունը ձևավորվում է ուղղակի կամ անուղղակի ընտրությունների միջոցով. ժողդ–ը մասնակցում է իշխանության ձևավորման գործընթացին: Առանձնացվում են Հ–յան նախագահ., խորհրդարան., խառը կամ կիսանախագահ. ձևերը: 1996–2018–ին ՀՀ–ում գործել է կիսանախագահ. ձևը:

ՀԱՆՐԱՔՎԵ, պլեբիսցիտ (լատ.՝ Plebiscitum, < plebs – ռամիկ և scitum – որոշում, վճիռ), 1. Հին Հռոմում ռամիկների (պլեբեյների) ժողովի ընդունած որոշումը (մ. թ. ա. V դ–ի սկզբից): 2. Համապետ., տարածաշրջ. կամ տեղ. նշանակության հարցերի վերաբերյալ (անկախության, Սահմանադրության, պետ. սահմանի հետ կապված) հանրության քվեարկության ձևով ազատ կամարտահայտման միջոց: Ժողովրդավարության կարևորագույն ինստ. է և ժողդ–ի անմիջական իրավատեղծ գործունեության մեխանիզմ: Հ–ի անցկացման պայմանները և ընթացակարգը կարգավորվում են երկրի սահմանադրությամբ և օրենքներով: Լինում են ժող., պետ. և համատեղ նախաձեռնությամբ: Հ–ով ընդունվում են նաև հանրագրեր (տես *Հանրագրություն*):

1990–ի դեկտ–ին ԽՍՀՄ ժողպատգմների 4–րդ համագումարի պատվիրակների Հ–ով, որին ՀԽՍՀ պատվիրակները չեն մասնակցել, որոշվել է պահպանել ԽՍՀՄ–ը: 1991–ի սեպտ. 21–ին ՀԽՍՀ–ում անցկացվել է Խորհրդ. Միությունից դուրս գալու և անկախանալու հարցով Հ., որի արդյունքներով (94,39 % կողմ) հայաստանը հռչակվել է անկախ պետություն: Իսկ 1991–ի դեկտ. 10–ին անկախության Հ–ով (99,89 %) իր անկախությունն է հռչակել ԼՂՀ–ն:

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, օրինականության և իրավակարգի այնպիսի խախտում, որն առաջացնում է քր. պատասխանատվություն: Որոշակի Հ–յան օրենքով նախատեսված հիմն. հատկանիշների համախումբը կոչվում է հանցակազմ:

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԱՆՁԻ ԴԵՄ, անձի կյանքի, առողջության, ազատության և արժանապատվության դեմ ուղղված ***հանցագործություն***: ՀՀ օրենս-

դրությամբ՝ անձի (մարդու) դեմ հանցագործություններ են՝ կյանքի և առողջության, անձի ազատության, պատվի և արժանապատվության, սեռական անձեռնմխելիության և սեռ. ազատության, մարդու և քաղաքացու սահմանադր. իրավունքների ու ազատությունների, ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունները:

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ, կանխամտածված ***հանցագործություններ***, որոնք ուղղված են արդարադատություն իրականացնող մարմինների, ինչպես նաև արդարադատության իրականացմանն առնչվող պետ. այլ մարմինների ու պաշտոնատար անձանց՝ օրենքով նախատեսված գործունեության դեմ:

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ, ***հանցագործության*** ձև, որին բնորոշ է հանցագործ կազմ–յունների (կազմակերպված խմբեր, ավազակախմբեր, հանցավոր համայնքներ ևն) կայուն հանցավոր գործունեությունը: Հանցավոր կազմ–յուններն ունեն ստորակարգ. կառուցվածք, նյութ. և ֆին. հենքն ու կապերը պետ. մարմինների հետ հիմնված են կոռուպցիոն մեխանիզմների վրա:

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ, միջազգ. խաղաղության և ժողդ–ների խաղաղ գոյակցության դեմ ուղղված համամարդկային վտանգավորության ***հանցագործություններ***: Մարդկության դեմ ուղղված ծանր հանցագործություններից են ԱՀՊ–ի ժամանակ թուրք. կառ–յան կազմակերպած ***Հայոց ցեղասպանությունը***, ԵՀՊ–ում՝ հրեաների ***Հոլոքոստը*** ևն:

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ, պաշտոնատար անձանց հանցավոր արարք՝ ծառայող. դիրքի օգտագործմամբ, որն էական վնաս է հասցնում պետ. կամ հաս. շահերին, քաղաքացիների իրավունքներին ու շահերին (պաշտոն. դիրքի չարաշահում, պաշտոն. լիազորությունների գերազանցում, անփութություն, կաշառակերություն, պաշտոն. կեղծիք):

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ, հանցագործության տեսակ, որի ոտնձգության օբյեկտը սահմանադր. կարգի հիմքերն են, պետության անվտանգությունը, պետ. իշխանության մարմինների բնականոն գործունեությունը, ծառայության շահերը, արդարադատության իրականացումը և կառավարման սահմանված կարգը: ՀՀ քր. օրենսգրքով (2003) պետ. իշխանության դեմ հանցագործություններ են պետ. դավաճանությունը, պետ. իշխանությունը յուրացնելը, սահմանադր. կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակ. կոչերը, լրտեսությունը, դիվերսիան ևն:

ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, սոցիալ–իրավ. երևույթ. ներառում է տվյալ հաս–յան մեջ որոշակի ժամանակահատվածում կատարված հանցագործությունների հանրագումարը: Բնութագրվում է քանակ. (դինամիկա, վիճակ) և որակ. (կառուցվածք, բնույթ) ցուցանիշներով:

ՀԱՆՈՒՇ (Hanusz) Յան (Իվան) Իոսիֆովիչ (1858–1887), լեհ լեզվաբան, հայագետ: Երիտքերական. դպրոցի ներկայացուցիչ: Հեղինակ է շուրջ 150 աշխ–յան («Լեհահայոց լեզվի մասին», հ. 1, 1886, «Հայ բարբառագիտության մասին», հրտ.՝ 1889, ևն): Անդրադարձել է նաև հայկ. ազգանունների ծագմանն ու այլ խնդիրների:

ՀԱՆՔ, արտադր. 1 կամ մի քանի միավորներից (հանքարան, բացահանք) բաղկացած, մակերևութ. կառույցների միասն. համալիրով և վարչատեխ. միասն. ղեկավարությամբ բնութագրվող հանք. ձեռն–յուն: Հանքախորշ, օգտ. հանածոների շահագործման ժամանակ աշխ–ի տեղ: Ստորգետնյա շահագործման դեպքում հանքափորվածքը սահմանափակող մակերևույթն է, բացհանքերում՝ նեղանցքի տեղամասը, հորատման դեպքում՝ հորանցքի ճակատամասը:

ՀԱՆՔԱԳԱԶ, այրվող գազ. անջատվում է ածխահանքերում, սակավ՝ աղի, մետաղների և ծծմբի հանքարաններում: Ազդույն է, օդից թեթև, հիմնականում կազմված է մեթանից: Օդում Հ–ի 5–16 % (ըստ մեթանի) պարունակությունը պայթյունավտանգ է: Հ–ի ՍԹԿ–ն 0,5–2 % է:

ՀԱՆՔԱՄՈՒՇ, ***լեռնային մուշ***, բնական նավթ, բիտում. ածխաջրածնով հագեցած կարծր խառնուրդ: Գույնը՝ դեղին, գորշ, կանաչավուն: Կարծրությունը՝ 1, խտ.՝ 0,85–1 *գ/սմ*³: Օծանելիքի և լաքաներկ. արդ–յան հումք է: Օգտագործում են նաև բժշկության մեջ:

ՀԱՆՔԱՅԻՆ ՅՈՒՂԵՐ, ***նավթայուղեր***, բարձրմոլ. ածխաջրածինների խառնուրդներ: Ըստ օգտագործման բնագավառի՝ լինում են շարժիչ., ռեակտիվ., փոխհաղորդչ., գլան., էլեկտրամեկուսիչ ևն: Ստացվում են նավթի դժվարաեռ բաղադրամասերից:

ՀԱՆՔԱՅԻՆ ՆԵՐԿԵՐ, ***բնական գունանյութեր***, գունավոր կավեր, օքսիդացած երկաթ. հանքաքարեր, պիրոլյուզիտ, ազուրիտ, մալաքիտ, լազուրիտ, կինովար, բարիտ և այլ ապարներ ու միներալներ, որոնք ունեն ներկող հատկություն: Տարբերում են Հ. ն–ի երկաթ–օքսիդ., կավ., կարբոնատ., սուլֆատ. և այլ տիպեր:

ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ, անօրգ. նյութեր, առավելապես աղեր, որոնք պարունակում են բույսերին անհրաժեշտ սննդատարրեր և օգտագործվում են հողի բերքատվությունը բարձրացնելու համար: Հ. պ. լինում են պարզ (ազոտային, ֆոսֆորային, կալիումական, միկրոպարարտանյութեր) և համալիր՝ պինդ (փոշենման ու հատիկավոր) և հեղուկ: Հողը հարստացնում են սննդատարրերով, փոխում են հողի լուծույթի ռեակցիան, ազդում են մանրէաբան. շարժընթացների վրա:

ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ (սովորաբար՝ ստորգետնյա), պարունակում են մեծ քանակությամբ կենսաբանորեն ակտիվ որոշ բաղադրիչներ (CO_2, H_2S, As ևն) և ունեն բարձր ջերմաստիճան ու ռադիոակտիվություն, որոնց շնորհիվ բուժիչ ազդեցություն են թողնում մարդու օրգանիզմի վրա: Տարբերում են կարբոնատ., ծծմբաջրածն., երկաթ. և այլ Հ. ջ.: Օգտագործվում են խմելու և առողջարան. բուժման համար:

ՀՀ տարածքը հարուստ է քիմ. տարբեր բաղադրության հանք. ջրերով՝ «Արարատ», «Արզնի», «Բջնի», «Դիլիջան», «Լիճք», «Սևան», «Ջերմուկ» (ավելի քան 400 բնական ելքեր):

ՀԱՆՔԱՊԱՐՔԵՐ, կայուն հանքաբան. կամ քիմ. կազմով միներալների բնական գոյացություններ, որոնք կազմավորում են երկրակեղևի երկրբ. մարմինները: Տարբերում են նստվածք., փոխակերպ. և միներալատեղակալումային Հ.:

ՀԱՆՔԱՎԱՆ, առողջավայր ՀՀ Կոտայքի մարզում՝ Սարմարիկ գետի կիրճում՝ ծ. մ–ից 2000 *մ* բարձր–յան վրա՝ Երևանից 85 *կմ* հս: Շրջապատված է անտառներով և թփուտներով ծածկված լեռներով: Կլիման մեղմ է, ամռանը՝ չափավոր տաք, ձմռանը՝ չափավոր ցուրտ: Հուլիսին օդի միջին ջերմաստիճանը 16°C է, հունվ–ին՝ –7°C, արևափայլքի տարեկան տևողությունը՝ 2200 *ժ*, տարեկան տեղումները՝ 600 *մմ*: Գործում է «Հանքավան» առողջարանը, որտեղ բուժվում են ստամոքսաղիք. համակարգի հիվանդություններով և նյութափոխանակության խանգարումներով հիվանդները:

«ՀԱՆՔԱՎԱՆ», ածխաթթվային հիդրոկարբոնատ–քլորիդ–նատրիում–կալցիում–մագնեզիում. հանք. ջուր: Ելքերը՝ ՀՀ Հանքավան գ–ի շրջակայքում: Ընդհ. հանքայնացումը՝ 8,2–8,7 *մգ/լ*, CO_2–ի պարունակությունը՝ 1,5–2 *մգ/լ*: Շահագործման ենթակա ջրաքանակը 4000 *մ*³*/օր* է, որի մոտ 3 %–ն օգտագործվում է բուժման և շշալցման համար:

ՀԱՆՔԱՎԱՆԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ, ՀՀ Կոտայքի մարզում՝ Հանքավան գ–ի մոտ: Հայտնի է դեռևս պատմ. անցյալից: Շահագործվել է XIX դ–ի սկզբներին: Գլխ. հանքաքար. միներալները՝ մոլիբդենիտ, քալկոպիրիտ, գալենիտ, մագնետիտ ևն: Հանքանյութերը պարունակում են նաև հազվագյուտ և ցրված տարրեր: Հանքավայրը պահարկված է:

ՀԱՆՔԱՎԱՆԻ (ՄԱՐՄԱՐԻԿԻ) ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԲԵԿՎԱԾՔ, երկրակեղևի խզումն. բեկվածք, Հանքավան–Ջանգեզուր տեկտ. բեկվածքի հս–արմ. շարունակությունը: Չգվում է Սարմարիկ գետի երկայնքով: Առաջացել է պալեոգենում, տեղ–տեղ տրավերտինների գոյացումներ են, ներծին հանքայնացումներ (ոսկերեր և պղինձ–մոլիբդեն): Բեկվածքի տարածման ուղղությամբ Գեղամա լ–վահանի անթրոպոգենի հրաբուխների շղթան է: Երկրաշարժաակտիվ է, երկայնքով տարածված են հանք. ջրերի ելքեր, սողանքներ:

ՀԱՇԱՄ (Aspius aspius), ծածանաձկների ընտանիքի ձուկ: ՀՀ–ում տարածված է կարմրաշուրթ ենթատեսակը՝ Արաքս, Մեծամոր, Հրազդան, Որոտան, Ախուրյան գետերում և դրանցով սնվող ջրանցքներում ու ջրամբարներում: Խոշոր ձուկ է՝ մարմինը կողքերից թեթևակի սեղմված: Երկ.՝ 40–50 (երբեմն՝ մինչև 100) *սմ*:

ՀԱՇԴԵՈՒՆ (Haşdeu) Ալեքսանդրու Թադեի (1811–1874), մոլդավ ռուսագիր գրող, գիտնական: Ռումինիայի ակադ–ի անդամ (1866): Մոլդ. բանագիտ–յան հիմնադիրը: Բ. Պ. ***Հաշդեուի*** հայրը: Հեղինակ է «Մոլդավական սոնետներ» (1837) բանաստեղծությունների շարքի, «Դուկան» (1830) պատմ. վիպակի, «Առնաուտի իշխանությունը» (1872) պատմ. նովելի, որտեղ նկարագրել է 3 հզ. հայ ընտանիքների՝ Մոլդովայից Տրանսիլվանիա գաղթը (1672), հայկ. քաղաքներ և այլ կենտրոններ հիմնադրելը:

ՀԱՇԴԵՈՒՆ Բոգդան Պետրիչեյկու (1836–1907), ռումին գրող, բանասեր, պատմաբան, հայագետ: Բուխարեստի համալսարանի պրոֆ. (1874–1900): Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1883)

և Ռումինիայի ԳԱ ակադ. (1877)։ Ա. Թ. *Հաշդևուի* որդին։ Եղել է մի շարք ամսագրերի («Տրայանովյան սյունակ», 1870–77, 1882–83, ևն) և թերթերի խմբ.։ Աշխ-ներում անդրադարձել է Ռումինիայի և Տրանսիլվանիայի հայերի պատմությանը։ Հեղինակ է «Նախնիների խոսքերը» (հ. 1–3, 1878–81), «Ռումինիայի պատմական արխիվը» (հ. 1–4, 1865–67), «Ռումինների քննական պատմությունը» (հ. 1, 2, 1873, 1875) և այլ երկերի, «Հայերը» (1852, ռուս.) բանաստեղծության, «Յոան իշխան Ահարկու» (նաև «Հայը» խորագրով, ռում., 1865) գեղ. մենագրութան, «Երեք մոգեր Արևելքից» (1875) դրամայի, հոդվածների և այլ գործերի։

ՀԱՇԵԿ (Hašek) Դոմինիկ (ծ. 1965), չեխ մարզիկ (տափօղակով հոկեյ)։ 1990-ի սկզբից խաղացել է Ազգ. հոկեյի լիգայի «Բուֆալո Սեյբեհիս» (Բուֆալո, 1992–2002), «Դեյտրոյթ Ռեդ Ռինգս» (2001–02, 2003–04) և այլ ակումբներում։ Սթենլիի գավաթի մրցանակակիր (2002), Նագանոյի ձմեռ. օլիմպ. խաղերի (1998) չեմպիոն։ Աշխարհի լավագույն դարպասապահներից է։

ՀԱՇԵԿ Յարոսլավ (1883–1923), չեխ գրող-երգիծաբան։ Հայտնի է Հ-ի «Քաջ զինվոր Շվեյկի արկածները համաշխարհային պատերազմի ժամանակ» (1921–23, անավարտ, հայ.՝ 1936) վեպը։ Հեղինակ է նաև պատմվածքների, ֆելիետոնների։ Հայ. հրատարակվել են նաև «Երգիծանքի և հումորի այբբենարան» (1983), «Շաֆրանեկի ժառանգությունը» (1992) պատմվածքների ժող-ները։

ՀԱՇԵՄԻ ՌԱՖՍԱՆՋԱՆԻ Ալի Աքբար (1934–2017), ԻԻՀ նախագահ՝ 1989–97-ին։ 1980–89-ին՝ Մեջլիսի նախագահ, 1979–1980-ին՝ ՆԳ նախարար։ 1988-ից՝ Մեջլիսի քաղ. նպատակահարմարությունների զարգացման, 2007–11-ին՝ փորձագետների խորհուրդների նախագահ։

ՀԱՇԻՇ (արաբ.), հնդ. կանեփի (Cannabis indica) իգական ծաղիկներից ստացված խեժանման նյութ։ Թմրանյութ է. առաջացնում է ԿՆՀ-ի ֆունկցիայի խանգարում, որն ուղեկցվում է զգայախաբությամբ (հալյուցինացիա) և հոգեկան գործունեության այլ խանգարումներով։ ՀՀ-ում օգտագործումն ու վաճառքը քրեորեն պատժելի են։

ՀԱՇՄՈՒԹՅՈՒՆ, **խեղանդամություն**, ըստ ՀՀ օրենսգրքի՝ աշխ. Հ. դժբախտ պատահարի հետևանքով աշխատողի առողջության վնասումն է։

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ, հաշվապահ. հաշվետվության կարևորագույն ձևը. ամփոփ աղյուսակում խմբավորված ցուցանիշների համակարգ, որոնք բնութագրում են հաշվետու ժամանակահատվածում միջոցների կազմը, տեղաբաշխումը, նշանակությունն ու աղբյուրը՝ արժեքային արտահայտությամբ։ Կազմված է 2 մասից՝ ակտիվ (ձախ կողմում) և պասիվ (աջ կողմում)։ Դրանց հանրագումարները պետք է լինեն հավասար։

ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, որևէ մարմնի հետ կապված ***կոօրդինատների համակարգի*** և ժամանակի ընթացքը նշող գործիքի՝ ժամացույցի համախումբ, որի նկատմամբ դիտարկվում է այլ մարմինների կամ նյութ. կետերի շարժումը։ Ընտրվում է ըստ նպատակահարմարության, օր.՝ Երկիրը, Արեգակը, Գալակտիկայի կենտրոնը ևն։ Այն Հ. ի., որում տեղի ունի Նյուտոնի առաջին օրենքը (տես ***Նյուտոնի օրենքներ***), կոչվում է հաշվարկման ***իներցիական համակարգ***։ Իներցիական Հ. ի-ի նկատմամբ արագացումով շարժվող Հ. ի. կոչվում է ***ոչ իներցիական հաշվարկման համակարգ***։

ՀԱՇՎԵԿՇԻՌ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, տնտ-յան զարգացման մակարդակը, վերարտադր-յան ծավալներն ու տեմպերը, տարածք. ու ճյուղ. համամասնությունները բնութագրող տնտ. ցուցանիշների առավել ընդհ. փոխկապակցված համակարգ։

ՀԱՇՎԵԿՇՈՒՎԱԾ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵ, տարվա ընթացքում կառ-յան ծախսերի և հարկ. մուտքերի հավասարություն։

ՀԱՇՎԻՉ ՊԱԼԱՏ, պետ. բյուջեի կատարման և ֆինանսաբյուջետ. կարգապահության պահպանման նկատմամբ վերահսկողության մշտապես գործող մարմին։ ՀՀ-ում համանման գործառույթներն իրականացնում է ՀՀ ***Վերահսկիչ պալատը***։

ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ, կազմ-յուն, որը համակարգիչների միջոցով հավաքում, պահպանում ու մշակում է տարբեր տեսակի տեղեկություններ, նաև զբաղվում է ***ծրագրային ապահովման*** մշակումով և հետազոտություններով, տարբեր դասերի խնդիրների լուծման մեթոդներով, հաշվող. աշխ-ների կազմակերպմամբ ևն։

ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ, մաթ-ի բաժին. ներառում է հաշվումներ կատարելու և հաշվող. տեխնիկա օգտագործելու հետ կապված հարցեր։ Նեղ իմաստով՝ Հ. մ. տիպային մաթ. խնդիրների լուծման թվային մեթոդների տեսությունն է։

ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՄԵՔԵՆԱ, տեղեկույթի և հաշվումների մշակման շարժընթացի մեքենայացման և ավտոմատացման համար նախատեսված համալիր կամ առանձին սարք, որը դրանք կատարում է տրված ալգորիթմին համապատասխան։ Ըստ մշակված տեղեկույթի ներկայացման եղանակի՝ տարբերում են անընդհատ՝ անալոգային, և դիսկրետ գործողությունների թվային Հ. մ-ներ (օր.՝ ***համակարգիչը*** ևն)։

ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ, 1. տեխ. և մաթ. միջոցների (հաշվող. մեքենաներ, սարքեր, գործիքներ, ծրագրեր ևն) համախումբ, որն օգտագործվում է հաշվարկման և տեղեկույթների մշակումը մեքենայացնելու և ավտոմատացնելու համար։ 2. Գիտ-յան և տեխնիկայի բնագավառ. զբաղվում է հաշվող. մեքենանեքի, սարքերի ու գործիքների մշակմամբ, պատրաստմամբ և շահագործմամբ։

ՀԱՇՏՅԱՆՆԵՔ, գվո Մեծ Հայքի *Ծոփք* նահգ-ում։ Հս-արմ-ից սահմանակից էր Խորձյան, արլ-ից՝ Տարոն, արմ-ից՝ Պաղնատուն և Բալահովիտ գվռ-ներին, հվ-ից ձգվում էր մինչև Հայկ. Տավրոս լ-շղթան և Կղեսուրի լ-անցքը։ Հ. եղել է հայ ***Արշակունիների*** սեպուհների ժառանգ. տիրույթը։ V–VI դդ-ում տիրել են բյուզանդացիները, VII դ-ում՝ հայերը, VIII–IX դդ-ում՝ արաբ. զավթիչները։ IX դ-ի վերջերից այն մտել է *Բագրատունիների* թագավորության մեջ։ XI դ-ի կեսերից Հ-ին տիրել են բյուզանդացիները, սելջուկ-թուրքերը, թաթար-մոնղոլները, XVI դ-ում՝ օսմ. թուրքերը։ Հ-ի (համապատասխանում էր Բիթլիսի նահգ-ի ճապաղջուր գվռկին) հայերը գրեթե լիովին բնաջնջվել են 1915-ի Մեծ եղեռնի ժամանակ։

ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ, ռազմ. գործողությունների ժամանակավոր դադարեցումը ռազմաճակատի ողջ երկայնքով (ամբողջ. հաշտություն) կամ դրա մի մասում (տեղային հաշտություն)՝ պատերազմող կողմերի համաձայնությամբ։ Ամբողջ. Հ-յանը սովորաբար հաջորդում է **հաշտության պայմանագրի** ստորագրումը։ Հ-յան ընթացքում ռազմ. դրությունը շարունակվում է, պատերազմի իրավունքը մնում է ուժի մեջ։

ՀԱՊԱԼԱՍԵՆԻ (Vaccinium), հապալասազգիների ընտանիքի մշտադալար կամ տերևաթափ թփերի ցեղ։ Հայտնի է 130 տեսակ՝ տարածված Ռուսաստանում, Հս. Կովկասում։ ՀՀ-ում հանդիպում է 3 տեսակ (ճահճային, մրտենական և կարմիր)՝ Լոռու, Կոտայքի, Գեղարքունիքի մարզերում։ Պտուղները պարունակում են շաքարներ, C և A վիտամիններ, օրգ. թթուներ, սերմերը՝ ճարպեր, տերևները՝ գլիկոզիդներ։ Դեղաբույս է. պատրաստուկներն օգտագործում են որպես միզամուղ, ախտահանող, կապող միջոց, նաև աղերի կուտակման (օր.՝ պողագրայի) ժամանակ։ Մեղրատու է, ներկատու։

ՀԱՊԱՂՄԱՆ ԳԻԾ, էլեկտրամագնիս. ազդանշանների ժամանակավոր կասեցման սարք (համառանցք մալուխի, ալիքատարի և այլ տեսքի), որը էապես չի աղավաղում դրանց ձևը։ Կիրառում են հեռուստատես. և ռադիոտեղորոշման սարքերում, հաշվող. տեխնիկայի, կապի և այլ սարքավորումներում։ Հապաղման ժամանակը սովորաբար չի գերազանցում 10^{-7}–10^{-2} *վ*։

ՀԱՊԵՏՈՍ, տիտան հուն. դից-յան մեջ։ *Գեայի* և *Ուրանոսի* որդին, *Ատլանտի*, *Պրոմեթևսի* հայրը։ Օլիմպոսի աստվածների դեմ ըմբոստանալու համար Հ. մյուս տիտանների հետ արտաքսվել է ***Տարտարոս***։

ՀԱՊՏՈԳԼՈԲԻՆ, մարդու արյան պլազմայի բարդ սպիտակուց (գլիկոպրոտեիդ)։ Կապում է էրիթրոցիտների քայքայման ժամանակ առաջացած ազատ հեմոգլոբինը՝ կանխելով նրա հեռացումն օրգանիզմից։

ՀԱՋ, մահմեդականների ուխտագնացությունը Մեքքա (Քաաբայի տաճար) և նրա արվարձան (Արաժար լ., Մուզդալիֆա և Մինա հովիտներ)՝ կուրբան-բայրամի տոնի առթիվ զոհաբերություն կատարելու համար։ Հ. Իսլամի 5 հենասյուներից է՝ Շահադի, աղոթքի (նամազ), տուրքի (զաքյաթ) և պահքի (սաում) հետ։ Կատարվում է մահմեդ. լուսնային օրացույցի զու-լ-հիջ-բայի վերջին ամսվա 7–13-րդ օրերին։ Հ. կատարած մահմեդականին տրվում է **հաջի** պատվ. տիտղոսը։

ՀԱՋ ՕՄԱՐ (մոտ 1797–1864), տուքուլերների (ֆուլբե ժողդ-ներից) պետության հիմնադիր-ղեկ-ն Արմ. Աֆրիկայում՝ 1840–60-ական թթ-ին, զորավար, մուսուլման կրոն. գործիչ։ Զոռվել է ապստամբած ֆուլբեների Մասինա պետության դեմ արշավանքի ժամանակ։

ՀԱՋԱՐ, **Օմանի լեռներ**, Արաբ. թ-կղզու արլ-ում, հիմնականում՝ Օմանում։ Երկ.՝ շուրջ 600 *կմ*, բարձր.՝ մինչև 3353 *մ* (Շամս լ.)։ Արմ-ում անապատներ և անապատացած սավաննաներ են, արլ-ում՝ մուսոն. արևադարձ. անտառների և մարգագետինների տեղամասեր։

ՀԱՋԻ ԴԻՄԻՏՐ (Ասենով Դիմիտր Նիկոլով, 1840–1868), Բուլղարիայի Ազգ. հերոս, հեղ. առաջնորդ, Բուլղ. 2-րդ լեգիայի

մասնակից: 1868-ին գլխավորել է (Ս. Կարաջեյի հետ) պարտիզան. ջոկատ (չետա) թուրք. զորքերի դեմ: Զոհվել է մարտում:

ՀԱՋԻ ՄՈՒՐԱԴ (1816–1852), Կովկասի լեռնականների ազատագր. պայքարի մասնակից, իմամ Շամիլի նաիբը (տեղակալ) և «աջ ձեռքը»: 1834–36-ին՝ Ավար. խանության տիրակալ: Մի շարք հաղթանակներ է տարել ռուս. զորքերի նկատմամբ: 1851-ին անցել է ռուսների կողմը, սպանվել է նրանցից փախչելու ժամանակ: Նրա մոմապատված գանգը պահվում է Ս. Պետերբուրգի Մարդաբանության և ազգագրության թանգարանում՝ «Հաջի Մուրադ ավարացի» մակագրությամբ: Հ. Մ-ի մասին է Լև Տոլստոյի «Հաջի Մուրադ» վիպակը:

ՀԱՋԻԲԵԿՈՎ Սոլթան Իսմայիլ օղլի (1919–1974), ադրբեջանցի կոմպոզիտոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1973): 1948-ից՝ Ադրբեջանի ֆիլհարմոնիայի գեղ. ղեկ.: Հեղինակ է «Գյուլշեն» (1950) բալետի, սիմֆ. և այլ գործերի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1952):

ՀԱՋԻԲԵԿՈՎ Ուզեիր Աբդուլ Հուսեյն օղլի (1885–1948), ադրբեջանցի կոմպոզիտոր, երաժշտագետ, հաս. գործիչ: ԽՍՀՄ ժող. արտիստ (1938): Ադրբեջանի ԳԱ ակադ. (1945): Ադրբեջանի պետ. կոնսերվատորիայի ռեկտոր (1928–29 և 1939–48), Կոմպոզիտորների միության նախագահ (1938–48): Ազգ. պրոֆեսիոնալ երաժշտության հիմնադիրը: Ստեղծել է երաժշտ. կոլեկտիվներ: Հեղինակ է օպերաների («Լեյլի և Մեջնուն», 1908, «Քյոռօղլի», 1937, ևն), երաժշտ. կոմեդիաների («Արշին մալ ալան», 1913, ևն), կանտատների, սիմֆ. երկերի, «Ադրբեջանի ժողովրդական երաժշտության հիմունքները» (1945) աշխ-յան, Ադրբ. ԽՍՀ օրհներգի երաժշտության (1945) ևն: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1946):

ՀԱՋԻԵ Զնդի Զաուարի (1908–2013), քուրդ բանագետ, գրականագետ, գրող: Քուրդ. գրկ-յան հիմնադիրներից Հայաստանում: Բանասիր. գիտ. դ-ր (1964), պրոֆ. (1966): Իրաքի ԳԱ թղթ. անդամ (1979): ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1974): Գրել է քուրդ. և հայ.: Հեղինակ է «Քրդական ֆոլկլոր» (հայ., 1947), «Քյոռ օղլի» էպոսի քրդական պատումները» (հայ. և քուրդ., 1953), «Քրդական ժողովրդական վիպերգեր» (հայ., 1960), «Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության արտացոլումը բանահյուսության մեջ» (հայ., 1965), «Ակնարկ Սովետական Հայաստանի քրդական գրականության» (հայ., 1970) և այլ աշխ-ների, համահեղ.՝ քուրդ. 1-ին քերակ-յան դասագրքի («Քրդերենի քերականություն», 1936, Ա. Խաչատրյանի հետ): Թարգմանել է հայ գրկ-յան բազմաթիվ նմուշներ:

ՀԱՋԻԵՎ Զաիդ (1898–1971), ավար բանաստեղծ: Դաղստանի ժող. բանաստեղծ (1958): Հեղինակ է Խորհրդ. Դաղստանի լեռնականներին վերաբերող «Լեռնային երգեր» (1931), «Ճերմակ աղավնի» (1955), «Սրտիս զգացմունքները» (1970) ժող-ների, նաև պիեսների:

ՀԱՋԻԼԱՐ (Hacilar), նեոլիթի վերջին շրջանի և էնեոլիթի դարաշրջանի բլուր Բուրդուր ք-ի մոտ (Թուրքիա): Մ. թ. ա. VIII–VII հզ-ամյակում եղել է որսորդությամբ և հավաքչությամբ զբաղվողների, երկրագործությանն անցման, մ. թ. ա. VI դ-ում և V դ-ի սկզբին՝ հողագործությամբ և անասնապահությամբ զբաղվող մարդկանց բնակատեղի: Տները հում աղյուսից են՝ կառուցված քարե հիմքի վրա, կան թաղումներ տան հատակի տակ, կանացի խեցե ֆիգուրներ ևն:

ՀԱՋՅԱՆ Գևորգ Սուրենի (ծ. 1947), ֆիզիկոս-տեսաբան: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (2003), պրոֆ. (2003): Ուսումնասիրել է մասնավորապես ջերմ նեյտրոնային աստղերի և սպիտակ թզուկների սառչելու երևույթը, պիոնային ու տարօրինակ աստղերի մակերևույթը, լիցքավորված շերտի կառուցվածքը և դրանց դիտող. դրսևորումները: Հաշվարկել է պտտվող և տատանվող թզուկների ու նեյտրոն. աստղերի ճառագայթած գրավիտացիոն ալիքների ինտենսիվությունը, բևեռացումը և տևողությունը:

ՀԱՋՈՐԴԱԿԱՆ ՄԻԱՅՈՒՄ (ֆիզ.), երկբևեռների միացում, երբ նրանց միջով անցնում է նույն հոսանքը, կամ քառաբևեռների միացում, երբ լարումն ու հոսանքի ուժը նախորդ քառաբևեռի ելքում համապատասխանաբար հավասար են հաջորդի մուտքի լարմանն ու հոսանքի ուժին:

ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (մաթ.), բնական թվերով համարակալված ցանկացած բնույթի տարրերի շարք. գրվում է $x_1, x_2 \ldots, x_n \ldots$ կամ համառոտ x_n տեսքով:

ՀԱՒԻՃԱՎԱՆՔ, VII–XIII դդ-ի ճարտ. համալիր ՀՀ Շիրակի մարզի Հառիճ գ-ում: Եղել է հոգևոր և մշակութ. նշանավոր կենտրոն: Հ-ի հնագույն կառույցը Սբ Գրիգոր եկեղեցին է (VII դ.), որին XII–XIII դդ-ում կցվել է գավիթը (չի պահպանվել): Գլխ.՝ Սբ Աստվածածին եկեղեցին գմբեթավոր դահլիճ է՝ կառուցող. և հարդարանքի բարձր արվ-ով: Ունեցել է դպրատուն (XIII դ.), կառուցվել են Վեհարանի շենքը (1871), սեղանատունը (1872), զանգակատունը (1886), նաև օժանդակ շինություններ:

ՀԱՒԻՃԻ ԴՊՐՈՑ, գործել է Հառիճ գ-ի (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզում) համանուն վանքում: 1856–57-ին բացվել է կիսագիշերօթիկ դպրոց, 1888-ին եղել է երկդասյան՝ 5 բաժանմունքով: 1896-ին փակվել է, վերաբացվել է 1907-ին՝ որպես երկսեռ ծխական, 1913-ին դարձել է 6-ամյա, ապա՝ միջնակարգ: 2012-ից Հառիճավանքում բացվել է *Հառիճի ընծայարանը*՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանին կից:

ՀԱՒԻՃԻ ԸՆԾԱՅԱՐԱՆ, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի Թրբանճյան ընծայարան, հոգևոր ուս. հաստատություն՝ ավագ դպրոցի կարգավիճակով, Գևորգյան ճեմարանին կից: Հիմնադրվել է 2012-ին Հառիճ գ-ի համանուն վանքում:

ՀԱՒԻՃԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, Հառիճավանքի ընկերություն, Հառիճի վան. ընկ., մշակութ., կրթ. կազմ-յուն: Ստեղծվել է 1850-ին Գյումրիում: Նպատակը Շիրակի ճարտ. գոհարներից՝ Հառիճի Սբ Աստվածածին տաճարը նորոգելն ու պահպանելն էր: Գործել է մինչև 1910-ական թթ.:

ՀԱՍԱՆ II (1929–1999), Մարոկկոյի թագավոր՝ 1961-ից, միաժամանակ՝ վարչապետ՝ 1961–63 և 1965–67-ին:

ՀԱՍԱՆ ԿՐՈՆԱՎՈՐՅԱԼ, XII դ-ի հայ իշխան, զորավար: Արցախի Առանշահիկների տոհմից: 1140-ական թթ-ից Խաչենում եղել է գահերեց: Բազմիցս հաղթել է սելջուկ-թուրքերին: 1182-ին իշխանությունը հանձնել է ավագ որդուն՝ Վախթանգին, մտել Դադիվանք՝ տեղի առաջնորդ ու իր եղբայր Գրիգորիսի մոտ կրոնավորելու: Կառուցել է Դադիվանքի փոքրիկ եկեղեցին և վան. համալիրի օժանդակ շինությունները:

ՀԱՍԱՆԿԱԼԱ, Դևե-Բոյնու, ք. Արմ. Հայաստանում, Էրզրումի նհնգ-ի Բասենի գվո-ի կենտրոնը՝ Էրզրումից մոտ 42 *կմ* արլ.: Հնում եղել է նշանավոր ըք (կոչվել է Դարույնք): 1829-ի հուլիսի 24-ին ռուս. բանակը գրավել է 500 բն. (հայ և թուրք) ունեցող Հ., սակայն ***Ադրիանուպոլսի պայմանագրով*** քաղաքը մնացել է թուրք. տիրապետության տակ: Հ-ի հայերի զգալի մասը 1830-ին տեղահանվել, եկել է Արլ. Հայաստան: Ռուս. զորքը Հ. գրավել է նաև 1878-ին և 1916-ին, սակայն թուրքերը 1918-ին դարձյալ զավթել են այն: Հ-ի հայերը (1909-ին՝ 45 ընտանիք) բռնությամբ տեղահանվել են 1915-ին՝ Մեծ եղեռնի ժամանակ:

ՀԱՍԱՆՈՎ Գոտֆրիդ Ալիևիչ (1900–1965), դաղստանցի կոմպոզիտոր: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1960): 1935–53-ին (ընդհատումով)՝ Դաղստանի երգի-պարի անսամբլի գեղ. ղեկ.: Դաղստանի պրոֆեսիոնալ երաժշտության հիմնադիրներից: Հեղինակ է դաղստան. 1-ին երաժշտաբեմ. երկերի («Խոչբար», 1943, օպերա, «Կառաչաչ», 1945, մանկ. բալետ, «Եթե սիրտը ցանկանա», 1945, երաժշտ. կոմեդիա), նաև դաշնամուրի և նվագախմբի համար կոնցերտների (1948, 1959) ևն:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1949, 1951):

ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼ ԴԱԼԱ (ծ. թ. անհտ–1260), Հայոց Արևելից կողմանց գահերեց իշխան, Արցախ-Խաչենի Հասան-Ջալալյան իշխան. տոհմի հիմնադիրը: 1214-ին հաջորդել է հորը՝ Վախթանգ Թանգիկ Բ-ին, դարձել է Արցախի ու հարակից շրջանների իշխանների գահերեցը (կոչվել է նաև «թագավոր», «ինքնակալ»): Երկու անգամ Կարակորումում այցելել է մեծ խանին, Հայաստանի համար արտոնություններ ստացել: 1260-ին միացել է մոնղոլների դեմ Վրաստանում բռնկած ապստամբությանը, որի ճնշումից հետո սպանվել է Արղուն խանի կարգադրությամբ: Կառուցել է Գանձասարի վանքը (1216–38), Վաճառի եկեղեցին (1251), հիմնովին վերակառուցել թաթարների ավերած Կեչառիսի վանքը (1248): Նրա պատվերով Տեր Իսրայել եպս-ն ստեղծել է Հայսմավուրքը (1240-ական թթ.):

ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ Բաղդասար, **Բաղդասար մետրոպոլիտ** (1775–1854), եկեղեց., հաս. գործիչ: Սերել է Արցախ-Խաչենի *Հասան-Ջալալյան* իշխան. տոհմից: 1820-ին ձեռնադրվել է եպս.: 1830-ին դարձել է Գանձասարի մետրոպոլիտ: Կաթողիկոս *Հովհաննես Ը Կարբեցին* Հ-Ջ-ին կարգել է Ղարաբաղի թեմի առաջնորդ: 1837-ին տեղափոխվել է թեմի կենտրոն՝ Շուշի. 1839-ին հրատարակել է Եսայի Հասան-Ջալալյանի «Պատմութիւնը»: Ռուսաստանի Սբ Աննայի 1-ին աստիճանի թագազարդ շքանշան (1839):

ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ Ռուբեն (1840–1902), բանաստեղծ, հաս. գործիչ: Հեղինակ է «Արաքս եւ Կուր գետերի գանգատը» (1861), «Կեանք» (1862) և այլ բանաստեղծությունների: 1880-ական թթ-ին Երևանում կազմակերպել է *«Հայասեր-ազգասեր»* միությունը:

ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆՆԵՐ, իշխան. տոհմ Արցախ-Խաչենում: Կոչվել է XIII դ-ի իշխան *Հասան-Ջալալ Դոլայի* անունով: Տիրույթները տարածվում էին Թարթառի

և Խաչենագետի միջին հոսանքներում: Իշխանանիստ բերդերն ու ամրոցներն էին Խոխանաբերդը, Դարպասները, Կաչաղակաբերդը, Վանքաշեն ավանը, հոգևոր կենտրոնները՝ Գանձասարը, Մենծառանից Սբ Հակոբա վանքը, Հուրեկը (Հոռեկ), Զրվշտիկը, ուշ միջնադարում՝ նաև Երիցմանկունքը: XVI դ–ի վերջին Ներքին Խաչենի Հ–Ջ–ի իշխանության ճյուղավորումով ստեղծվել են Զրաբերդի, Խաչենի ու Գյուլիստանի մելիքություններ, որոնց ներկայացուցիչներն ընդունում էին իրենց տոհմակցությունը:


ՀԱՍԱՐԱԿԱԾ (աշխարհագր.), երկրագնդի պտտման առանցքին ուղղահայաց և նրա կենտրոնով անցնող հարթությամբ երկրագնդի մակերևույթի հատման գիծը: Հ. երկրագունդը բաժանում է Հս. և Հվ. կիսագնդերի: Հ–ից հս և հվ հաշվում են աշխարհագր. լայն–յունները (0–90°): Հ–ի երկ. 40075696 *մ* է: Տարվա ընթացքում 2 անգամ՝ գարնան. և աշնան. գիշերահավասարների օրերին, արեգակը Հ–ի վրա լինում է զենիթում:

ՀԱՍԱՐԱԿԱԾԱՅԻՆ ԳՈՏԻ, Երկրի աշխարհագր. գոտի, որը տարածվում է հասարակածի 2 կողմերում՝ հս. լայն–յան 5–8° և հվ. լայն–յան 4–11° զուգահեռականների միջև: Բնորոշ են մշտ. շոգ և խոնավ կլիման, ջրագր. խիտ ցանցը, փարթամ բուսականությունն ու հարուստ կենդ. աշխարհը: Տարեկան միջին ջերմաստիճանը 25–28°C է, տեղումները՝ 1500–3000 *մմ*, տեղ–տեղ՝ մինչև 10 հզ. *մմ*, ունեն տեղատարափ բնույթ և հաճախ ուղեկցվում են ամպրոպներով ու արևադարձ. փոթորիկներով:

ՀԱՍԱՐԱԿԱԾԱՅԻՆ ԳՎԻՆԵԱ, **Հասարակածային Գվինեայի Հանրապետություն**, պետություն Կենտր. Աֆրիկայում՝ Ատլանտ. օվկ–ի ափին: Սահմանակից է Կամերունին և Գաբոնին: Տարածքը՝ 28 հզ. *կմ*² կազմված մայրցամաք. (Ռիո Մունի, 26 հզ. *մ*²) և կղզային (Բիոկո, 2 հզ. *մ*²) մասերից, բն.՝ 704 հզ. (2013): Մայրաքաղաքը՝ Մալաբո: Պաշտոն. լեզուն՝ իսպ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Բաժանված է 7 վարչ. պրովինցիաների: Բնակչության մեծ մասը կաթոլիկ է: Անդամակցում է ՄԱԿ–ին, Աֆրիկ. միությանը, ԱռտՀԿ–ին ևն: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 16 հզ. ԱՄՆ դոլար է (2010): Արտահանում է նավթ, գազ, փայտանյութ, կակաո, սուրճ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, սպառող. ապրանքներ, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ կենտրոնաաֆրիկ. ֆրանկ:

Կղզային հատվածը հայտնաբերել են պորտուգալացիները XV դ–ի վերջին, XVI դ–ի սկզբին սկսվել է նրա գաղութացումը: 1778–ից եղել է իսպ. տիրույթ՝ Իսպ. Գվինեա, 1960–ից՝ Իսպանիայի «անդրծովյան պրովինցիա»: Անկախությունը հռչակել է 1968–ին, 1979–ից ստեղծվել է ամբողջատիր. վարչակարգ՝ նախագահ Ն. Մ. Թեոդորո Օբիանգի գլխավորությամբ:

ՀԱՍԱՐԱԿԱԾԱՅԻՆ ԿՈՕՐԴԻՆԱՏՆԵՐ (աստղագիտ.), 2 ***երկնային կոորդինատների*** համակարգեր, որտեղ հիմն. շրջանը ***երկնային հասարակածն*** է, իսկ բևեռը՝ ***աշխարհի բևեռը***. առաջին համակարգը տրվում է δ հակումով և t ***ժամային անկյունով***, իսկ երկրորդում t–ն փոխարինվում է α ուղղակի ծագումով:



Հասարակածային կոորդինատների 1-ին և 2-րդ համակարգերը. P-ն և P′-ը՝ աշխարհի հյուսիսային և հարավային բևեռները, QQ′-ը՝ երկնային հասարակածը, PMm-ը՝ M լուսատուի ժամային շրջանի (հակման շրջանի) մասը, Z-ն և Z′-ը՝ զենիթը և նադիրը, PSP′N-ը՝ երկնային միջօրեականը, N-ը և S-ը՝ հյուսիսի և հարավի կետերը

ՀԱՍԱՐԱԿԱԾԱՅԻՆ ՀՈՍԱՆՔ, 1. Համաշխ. օվկ–ի պասսատ., մակերևութ. հոսանքն արևադարձ. և հասարակած. լայն–ներում՝ պայմանավորված պասսատային գործունեությամբ: 2. Մակընթաց. հոսանք, որն առաջանում է ամսական 2 անգամ, երբ Լուսինը հատում է երկնային հասարակածի հարթությունը:

ՀԱՍԱՐԱԿԱԾԱՅԻՆ ՄՈՒՍՈՆԱՅԻՆ ԿԼԻՄԱ, հասարակած. գոտու ցածր ճնշման և մերձհասարակած. գոտու բարձր ճնշման փոփոխակի ազդեցությամբ ձևավորվող կլիմա: Բնորոշ են չոր. (ձմռանը) և անձրևային (ամռանը) սեզոնները: Ամենացուրտ ամսվա միջին ջերմաստիճանը 15–18°C է, ջերմաստիճանի տարեկան տատանումը՝ 12°C, տարեկան տեղումները՝ մոտ 1000 *մմ*: Տարածված են սավաննային բուսածածկույթը, առավել չոր. շրջաններում՝ արևադարձ. տափաստանները, առավել խոնավ շրջաններում՝ խոնավ արևադարձ. անտառները:

ՀԱՍԱՐԱԿԱԾԱՅԻՆ (ՆԵԳՐՈ–ԱՎՍՏՐԱԼՈԻԴԱԿԱՆ) ՌԱՍԱ, նեգրոիդների և ավստրալոիդների ռասայի հավաք. անվանումը: Տարածված է Աֆրիկայի, Հվ. և Հվ–արլ. Ասիայի, Ավստրալիայի և Օվկիանիայի արևադարձ. գոտում: Բնորոշ են գանգուր կամ ալիքավոր մազերը, մուգ գույնի մաշկն ու աչքերը, լայն քիթը, հաստ շուրթերը:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ, 1. մարդկանց գործունեությունը՝ ուղղված հասյան տնտ. և հոգևոր պահանջմունքների բավարարմանը: Հ. ա–ում առանձնացնում են սոցիալապես կազմակերպված աշխ. (այսինքն՝ գործունեություն, որը ներառված է աշխ–ի հաս. բաժանման համակարգում) և աշխ., որն ուղղված է ինքնասպասարկմանը: 2. Իշխանության տեղական մարմինների և զբաղվածության ծառայությունների կազմակերպած վարձատրվող աշխ. (առավելապես՝ գործազուրկ քաղաքացիների համար)՝ բնակչության ժամանակավոր զբաղվածություն ապահովելու նպատակով: Այն առաջին անգամ կիրառել է ԱՄՆ նախագահ Ֆ. Ռուզվելտը «Նեմ ճգնաժամի» տարիներին (1929–33): ՀՀ–ում վարձատրվող Հ. ա–ի ծրագիր է իրականացվել 2005–11–ին, որի նպատակը գործազուրկներին և աշխ. փնտրողներին ժամանակավոր աշխ–ով ապահովելն էր:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՇՆԻՆՔ, պետության ծագման տեսություն, ըստ որի՝ պետությունը մարդկանց միջև կնքված դաշինքի արդյունք է, որտեղ առանձին անհատներն ինքնակամ հրաժարվում են իրենց բնական իրավունքների որոշ մասից՝ հանուն պետ. իշխանության: XVII–XVIII դդ–ում առաջադրել են Հ. Գրոտիոսը, Թ. Հոբսը, Դ. Դիդրոն, Ժ–Ժ. Ռուսոն և ուր.: Իսկ պետության՝ որպես մարդկանց միջև պայմանագրի արդյունք, մեկնաբանությունն առաջադրել է *Էպիկուրը*:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՍՏԱՄՈՒԿ, համատերանմանների ընտանիքի համստերների ենթաընտանիքի կրծող կաթնասուն կենդանի: ՀՀ–ում հանդիպում է հս., հվարլ. և Արարատյան դաշտի կիսաանապատների առանձին կղզիացած վայրերում: Մարմնի երկ.՝ մինչև 12,6, պոչինը՝ 3,4 *սմ*: Վնասում է մշակաբույսերը: Մի շարք վարակիչ հիվանդությունների հարուցչակիր է:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՀԿ), մարդկանց կամավոր միավորումներ՝ ստեղծված շահերի ընդհանրության հիման վրա՝ հոգևոր կամ ոչ նյութ. այլ պահանջմունքներ բավարարելու նպատակով: ՀՀ–ում 2001–ին ընդունվել է օրենք «Հասարակական կազմակերպությունների մասին», որը կարգավորում է ՀԿ կազմելու և նրանց անդամագրվելու, ՀԿ գործունեության, վերակազմակերպման և լուծարման հետ կապված իրավահարաբերությունները:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ, զանգված. գիտակցության վերաբերմունքը հաս. կյանքի կարևոր և վիճելի հարցերի, նաև առանձին անձանց ու հաստատությունների գործունեության նկատմամբ: Հ. կ. արտահայտվում է իշխանության մարմինների ընտրության, զանգված. հաղորդակցության միջոցներով ազգաբնակչության հարցումների ժամանակ, կարգավորում անհատների, սոցիալ. խմբերի ու ինստների վարքը, հաստատում հաս. հարաբերությունների որոշակի նորմեր:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՑՎԱԾՔ–ՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ, պատմ. մատերիալիզմի կատեգորիաներ, որոնցով բնորոշում են հաս–յան կյանքի նյութ. և հոգևոր կողմերը, դրանց կապն ու փոխազդեցությունը: Ըստ մարքսիստ. փիլ–յան՝ հաս. կեցությունը հաս–յան նյութ. կյանքն է (մարդկանց նյութ. հարաբերությունները արդ–յան գործընթացում), իսկ հաս. գիտակցությունը՝ կեցության արտացոլումը (ծագմամբ՝ երկրորդային) և արտահայտում է հաս. կյանքի հոգևոր կողմը: Դրանք մշտական փոխազդեցության մեջ են:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԵՂԱԴՐՈՂ, հաս. կազմ–յան (աշխատավոր. կոլեկտիվի) ներկայացուցիչ խորհրդ. քր. դատավարությունում, որը տվյալ կազմ–յան (կոլեկտիվի) հանձնարարությամբ մասնակցում էր դատ. քննությանը՝ որպես մեղադրող: Դատավարության ինքնուրույն մասնակից էր, ուներ ընդարձակ դատավար. իրավունքներ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՋԱՏՆԵՐ, գաղութներով ապրող միջատներ (մեղուներ, մրջյուններ, տերմիտներ, որոշ կրետներ): Գաղութի (օր.՝ տերմիտների) մեջ մտնում են սեռ. առանձնյակներ (արուներ և էգեր, որոնք ապահովում են բազմացումը), զինվորներ (պաշտպ–յունը) և աշխատավորներ (կերի հայթայթում, բների կառուցում ու պահպանություն) ևն:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՆՔ, հաս–յան արտադրող. ուժերի (աշխ–ի միջոցներ ու առարկաներ) նյութահիրային տարրերի ամբողջությունը: Պատմ. զարգացման ընթացքում տեղի է ունեցել Հ.ն. հ–ի փոփոխություն՝ ձեռքի աշխ–ի գործիքներից դեպի մեքենաների զարգացած համակարգ:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, լայն իմաստով՝ մարդկանց ընդհանրություն, որը կազմավորվում է նրանց համատեղ գործունեության ընթացքում: Նեղ իմաստով՝ Հ. (հասարակարգ) սոցիալ. համակարգի պատմ., կառուցվածք. և գործառն. որոշակի տեսակ է (անտիկ, ավատատիր., ինդուստրիալ, գիտ. ևն), տվյալ տեսակին պատկանող որոշակի սոցիալ. օրգանիզմ է («Ճապոնական ֆեոդալիզմ») կամ սոցիալ. հարաբերության որոշակի ձև է (օր., ըստ Հեգելի, պետությանը հակադրվող Հ.):

ՀԱՍԴՐՈՒԲԱԼ (Hasdrubal, ծ. թ. անհտ– մ. թ. ա. 221), Կարթագենի զորավար և քաղ. գործիչ: ***Համիլկար Բարկայի*** փեսան: Վերջինիս մահվանից հետո՝ մ. թ. ա. 228–ին Իսպանիայում եղել է Կարթագենի տիրույթների կառավարիչը և զգալիորեն ընդլայնել նրա սահմանները:

ՀԱՍԴՐՈՒԲԱԼ Բարկիդ (ծ. թ. անհտ– մ. թ. ա. 207), Կարթագենի զորավար: ***Համիլկար Բարկայի*** որդին և ***Հաննիբալի*** կրտսեր եղբայրը: Կարևոր դեր է խաղացել Պունիկյան 2–րդ պատերազմում:

ՀԱՄԹԻՆԳՍ (Hastings), **Հեյստինգս,** ք. Մեծ Բրիտանիայում՝ Անգլիայի Արլ. Սուսեքս կոմսությունում՝ Պա ղե Կալե նեղուցի ափին: Բն.՝ 90,3 հզ. (2011): Խոշոր առողջարան է, շախմատի միջազգ. ամենամյա մրցումների վայր: Հ–ի շրջանում 1066–ին Նորմանդիայի Վիլհելմ հերցոգի զորքերը պարտության են մատնել Հարոլդ II թագավորի անգլո–սաքսոն. զորքերին:

ՀԱՍԻՄՈՏՈ (Hasimoto) Սինոբու (ծ. 1918), ճապոնացի սցենարիստ, կինոռեժ., պրոդյուսեր: Նրա սցենարներով Ա. ***Կուրոսավան*** նկարահանել է «Ռասյոմոն» (1950), «Յոթ սամուրայ» (1954), «Ողջ մարդու գրառումները» (1955), «Սարդոստայնի ամրոցը» (1957, ըստ Վ. Շեքսպիրի «Մակբեթ» ողբերգության) ևն: Հեղինակ է նաև «Ապստամբը» (1967), «Գլուխը» (1968), «Ճապոնիայի կործանումը» (1973), «Ես ուզում եմ կակղամորթ դառնալ» (2008) և այլ կինոսցենարների:

ՀԱՍԻՆԱ ՎԱ.ՋԵԴ (ծ. 1947), Բանգլադեշի վարչապետ՝ 1996–2001–ին և 2009–ից: Պայքարել է զեն. Էրշադի վարչակարգի դեմ (1982–90):

ՀԱՍԻՈՒՄ (Hassium), Hs, տարրերի պարբեր. համակարգի 8–րդ խմբի արհեստականորեն ստացված քիմ. տարր, կարգաթիվը՝ 108: Ճառագայթաակտիվ է, առավել երկարակյաց իզոտոպը՝ ^{269}Hs ($T_{1/2}$ = 13 *վ*): Կոչվել է հայտնագործման վայրի [Հեսսեն (Hessen), Գերմանիա] անունով:

ՀԱՄԿ, բույսերի ծաղկաբույլ, որի երկարացած գլխ. առանցքի վրա բաշխված են նստադիր ծաղիկները (պարզ Հ.՝ եզան լեզվի, աղավնիճի) կամ հասկիկները (բարդ Հ.՝ աշորայի, ցորենի ևն):

«ՀԱՄԿ», կրոն., գր. և բանասիր. ամսագիր (1932–ից, Անթիլիաս): ՄՏԿԿ պաշտոն. հրտ–յուն: Հիմնադիր–խմբ.՝ Բարկեն ***Կյուլեսերյան***, հետագայում ի պաշտոնե պատ. խմբ–ներ են եղել գահակալ կաթողիկոսները:

«ՀԱՄԿ», ուսանող., կրթամշակութ. ամսաթերթ (2000–ից, Երևան): ՀԱՄՀ պաշտոնաթերթ:

«ՀԱՄԿ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ» (1948–2003, Անթիլիաս): ՄՏԿԿ հրտ–յուն: Հիմնադիր–խմբ.՝ Գարեգին ***Հովսեփյան***: Խմբագր. խորհուրդ:

ՀԱՄԿԱԺԱՆԳ, սպորինիա, պայուսակավոր սնկերի ցեղ: Բույսերի մակաբույծներ են, առաջացնում են հացազգիների (հաճախ՝ աշորայի) հիվանդություն: Զարգանում են տեր բույսի սերմնարաններում: Հայտնի է մոտ 30 տեսակ: Առավել տարածված է ծիրանագույն Հ., որը հատուկ մշակվում է բժշկության մեջ օգտագործվող ալկալոիդներ ստանալու համար:

ՀԱՄԿԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ (փիլ.), մտածողության ձև. արտացոլում է առարկաների և երևույթների էական կապերն ու հարաբերությունները, հատկությունները: Հ–յան հիմն. տրամաբ. գործառույթն ընդհանուրի առանձնացումն է՝ տվյալ դասի առարկաների առանձին հատկությունների տարանջատման միջոցով: Հ–ի կառուցվածքում տարբերում են բովանդակությունը (ինտենսիոնալություն)՝ նրանում արտացոլված հատկությունների ամբողջությունը, և ծավալը (էքստենսիոնալություն)՝ առարկաների այն դասը, որն օժտված է այդ հատկություններով:

«ՀԱՄԿԵՐ», մանկ. ամսագիր (1905–17, 1922, Թիֆլիս): Խմբ–հրտ–ներ՝ Կատարինե Լիսիցյան, Ստեփան Լիսիցյան: «Մանկավարժական գրադարան» խորագրով լույս է ընծայել մասնագիտ. գրքեր:

ՀԱՄԿԿԱՅԻՆ ԹԵՓՈՒԿՆԵՐ, լոդիկուլներ (լատ.՝ lodicula – ծածկող), թեփուկներ՝ տեղավորված հացազգիների մեծամասնության ծաղիկների սերմնարանի հիմքում: Ծաղկման ժամանակ ուռչելով՝ նպաստում են ծաղիկների բացվելուն:

ՀԱՄՄԻԿ (Հակոբյան Թագուհի Ստեփանոսի, 1878–1947), ղերասանուհի: ՀԽՍՀ ժող. արտիստ (1935): Հոգեբ. ռեալիզմի վարպետներից: 1904–20–ին՝ Թիֆլիսի տարբեր հայկ. թատերախմբերի, 1921–ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասանուհի (Շպպանիկ՝ Շիրվանզադեի «Նամուս», Վիտտիխեն՝ Գ. Հաուպտմանի «Ձրասույզ զանգ», Վասսա Ժելեզնովա՝ Մ. Գորկու «Վասսա Ժելեզնովա», Շուշան՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», ևն): Նկարահանվել է կինոյում («Նամուս», 1928, «Պեպո», 1935, «Սևանի ձկնորսները», 1938, բոլորը՝ Հայֆիլմ): Հեղինակ է «Թատերական հուշեր» (1947) գրքի:

ՀԱՄՄԻԿ (Jasminum), ***ժասմին***, ձիթենազգիների ընտանիքի գեղազարդիչ թփերի ցեղ: Հայտնի է մոտ 250 տեսակ, ՀՀ–ում՝ 1՝ Հ. թփայինը՝ գրեթե բոլոր մարզերի ստորին և միջինլեռն. գոտիներում: Թփի բարձր.՝ մինչև 1 *մ*: Ծաղիկներից ստանում են յուրահատուկ յուղ, որն օգտագործում են օծանելիքի արտադր–յան մեջ: Այգեգործության մեջ երբեմն շփոթում են սպիտակ կամ կեղծ Հ–ի հետ:

ՀԱՄՄԻԿՅԱՆ Սուրեն Գուրգենի (ծ. 1935), կինոգետ, կինոքննադատ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1987): Պրոֆ. (1999): 1971–82–ին՝ ՀՀ պետկինոյի գլխ. խմբ.: Հեղինակ է «Հայաստանի կինոն» (1981), «Սեղմ կադր» (1992), «Փրկության կղզի: Կինոարվեստի գեղագիտական պարամետրերը» (2003, երեքն էլ՝ ռուս.), «Լռության գեղագիտությունը XX դարի դրամատուրգիայում» (հայ., ռուս., 2013, համահեղ.), «Գիրք «առանց» ավարտի» (ռուս., 2014) և այլ աշխ–ների, կինոսցենարների:

ՀՀ «Մովսես Խորենացի» (2005), ՄՆ (2015), ԿԳՆ (2015) ոսկե մեդալներ:

ՀԱՄՊԻՄ (գերմ.՝ Jasper), նստվածք. կայծքարային ապար: Կարծր.՝ 7, անթափանցիկ, կոտրվածքը՝ խեցային: Հիմնականում կազմված է գաղտնաբյուրեղ. քվարցից, երբեմն խառնուրդի ձևով պարունակում է խալցեդոն: Երկաթի և մանգանի օքսիդների շնորհիվ տարագույն է (կարմիր, դեղին, շագանակագույն, կանաչ): Կիրառում են ոսկերչության մեջ:

ՀԱՄՍԵԼ (Hassel) Օդդ (1897–1981), նորվեգացի քիմիկոս, կոնֆորմացիոն վերլուծության հիմնադիրներից, գիտ. դպրոցի կազմակերպիչ: Ռենտգենագրության և իր կատարելագործած գազ. էլեկտրոնագրության եղանակներով ուսումնասիրել է ցիկլոհեքսանի և նրա ածանցյալների կառուցվածքը: Նոբելյան մրց. (1969, Դ. ***Բարտոնի*** հետ):

ՀԱՄՏ ԱՂԼԻ, ողնաշարավոր կենդանիների և մարդու աղիների մաս՝ բարակ աղիից մինչև հետանցքը կամ կոյանցքը: Հ. ա–ում ներծծվում է ջուրը, և ձևավորվում է կղանքը: Մարդու Հ. ա. բաժանվում է կույր, շրջանակաձև և ուղիղ աղիների: Հիվանդություններից հաճախ հանդիպում են բորբոքումները:

ՀԱՄՏ ԱՂԻՒ ԲՈՐԲՈՔՈՒՄ, կոլիտ (հուն.՝ colon – հաստ աղի), սուր կամ քրոնիկ. բորբոք. հիվանդություն՝ պայմանավորված վարակիչ հիվանդություններով, սնման կոպիտ խախտումներով և այլ պատճառներով: Կարող է լինել նաև հատվածային (ուղիղ աղիի բորբոքում): Հաճախ դիզենտերիայի ախտանշան է:

ՀԱՄՏԱԿՏՈՒՅՑ ԵՐԱՇՏԱՀԱՎԵՐ (Panuridae), ճնճղուկանմանների կարգի թռչունների ընտանիք: Հայտնի է 19 տեսակ, ՀՀ–ում՝ 2՝ բեղավոր և երկարագի Հ. ե.: Կ. զ.՝ 8–47 *գ*: Աչքի են ընկնում երկար պոչով, մոխրագույն և շիկավուն նուրբ գույներով, այտերի բեղանման կամ հոնքերի սև շերտով:

ՀԱՄՏԱԿՏՈՒՅՑ ՔԱՐԱԴՐ (Charadrus leschenaultii), քարադրների ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, հազվագյուտ: Մարմնի երկ.՝ 22–25, թևերի բացվածքը՝ 53–60 *սմ*: Երկարաոտ է, կտուցը՝ սև, երկար: Ձայնը դայլայլուն է: Ապրում է ձկնաբուծ. լճակներում: Որպես հազվագյուտ, փոքրաքանակ և բավական սահմանափակ տարածված տեսակ՝ կարիք ունի հատուկ պահպանության:

ՀԱՄՏԱՃԱԿԱՏՆԵՐ, ծածանաձկների ընտանիքի ձկների 2 սեռի (յուրաքանչյուրում՝ 1 տեսակ) ընդհ. անվանումը: Երկ.՝ մինչև 1 *մ*, կ. զ.՝ 25–30 *կգ* (խայտաբղետ Հ.): Ապրում են Չինաստանի և Ռուսաստանի (Ամուր գետի) ջրավազաններում: Կլիմայավարժեցվել են Ասիայի և Հվ. Եվրոպայի երկրներում: Հայաստան է ներմուծվել 1960–ին: ՀՀ կարպային ձկնաբուծ. հիմն. ձկնատեսակներից է:

ՀԱՄՏԱՏՎԱԾ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ, արդ. ձեռն–յան կամ էլ. տեղակայանքի կազմի մեջ մտնող միատեսակ էլ. մեքենաների անվան. հզորությունների գումարը:

ՀԱՄՏԱՏՈՒՆ ԿԱՊԻՏԱԼ, կապիտալի այն մասը, որ գոյություն ունի արտադրամիջոցների արժեքի ձևով և արտադր–յան գործընթացում իր մեծությունը չի փոխում:

ՀԱՍՏԱՏՈՒՆ ՀՈՍԱՆՔ, ժամանակի ընթացքում ըստ ուժի և ուղղության չփոփոխվող էլ. հոսանք: Առաջանում է հաստատուն լարման ազդեցությամբ և գոյատևում է միայն փակ շղթայում: Հ. հ-ի հիմն. օրենքներն են ***Օհմի օրենքը*** և ***Ջոուլ–Լենցի օրենքը***, ճյուղավորված շղթաներում՝ ***Կիրխհոֆի օրենքը***:

ՀԱՍՏԱՏՈՒՆՆԵՐ, հաստատուն մեծություններ, 1. (մաթ.) մեծություններ, որոնք, խնդրի պայմանների համաձայն, պահպանում են նույն արժեքը: 2. (ֆիզ.) տես *Հիմնարար ֆիզիկական մեծություններ*: 3. Ժամանակի Հ., դինամիկ. համակարգի իներցիականությունը բնութագրող մեծություն, որն ունի ժամանակի չափայնություն:

ՀԱՍՏՈՑ, 1. (տեխ.) տարբեր արտադր-յուններում օգտագործվող նյութերի (մետաղ, փայտ ևն) մշակման մեքենա: 2. Որոշակի աշխ-ներում օգտագործվող հարմարանք, օր.՝ նկարչի նկարակալ, քանդակագործի պտտվող եռոտանի սեղան: 3. Հիմնատակեր, որոնց վրա ամրացվում են որոշակի մեխանիզմներ, օր.՝ գնդացիր, ոտքի կարի մեքենա:

ՀԱՍՏՈՑԱՅԻՆ ԱՐՎԵՍՏ, կերպարվ-ի տեսակ, գեղ. ինքնուրույն արժեք ունեցող ստեղծագործություններ (գեղանկար, քանդակ, կիսանդրի ևն), որոնք նախատեսված չեն որևէ շինության, հրտ-յան ևնի համար: Անվանումն առաջացել է «հաստոց»-ից (նկարակալ, քանդ. հաստոց), որի վրա ստեղծվում են Հ. ա-ի գործերը:

ՀԱՍՏՈՑԱՅԻՆ ԳՆԴԱՅԻՐ, հաստոցի (հիմնատակի) վրայից կրակող արագաձիգ ինքնաշխատ զենք. նախատեսված է թշնամու կենդանի ուժի ոչնչացման համար: Գնդակների մատուցումը ժապավենով է, լրակազմը՝ մեծ, զանգվածեղ փողերը հովացվում են, որն ապահովում է բարձր արագագործություն՝ 1000 մ հեռահարությամբ:

ՀԱՍՏՈՑԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ***մեքենաշինության*** առաջատար ճյուղ. թողարկում է մետաղամշակման և փայտամշակման հաստոցներ, ավտոմատ և կիսաավտոմատ գծեր, դարբնոցամամլիչային և ձուլման սարքավորումներ:

ՀԱՄԲԱԹՅԱՆ Արփիկ Աշոտի (ծ. 1950), համաճարակաբան, իմունաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1997), պրոֆ. (1998): Հասմիկ ***Հասրաթյանի*** քույրը: Մոսկվայի Ի. Մ. Սեչենովի անվ. առաջին բժշկ. համալսարանի գիտ. քարտուղար (2000–ից): Աշխ-ները վերաբերում են համաճարակաբանության, վիրուս. և սեռ. ճանապարհով փոխանցվող վարակների հարցերին: ՌԴ բժշկատեխ. ակադ-ի անդամ (2003):

ԺՏՆՑ արծաթե մեդալ (1986):

ՀԱՄԲԱԹՅԱՆ Գրիգոր Հովհաննեսի (1918–2001), ճարտարագետ, քաղաքաշինարար: Ռուբեն ***Հասրաթյանի*** հայրը: 1958–61-ին՝ Երևաննախագիծ ինստ-ի հիմնադիր-տնօրեն, 1961–62-ին՝ Լենինականի քաղխորհրդի, 1962–75-ին՝ Երքաղխորհրդի նախագահ, Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության պետ, 1987–90-ին՝ ՀԱՊԹ-ի տնօրեն: Մեծապես նպաստել է Երևանի կառուցապատմանը: Երևանի պատվ. քաղաքացի (1998):

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան:

ՀԱՄԲԱԹՅԱՆ Էգրաս Հասրաթի (1903–1981), ֆիզիոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (1936), պրոֆ. (1938), ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1939), ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1947): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1974): Համաշխ. ճանաչում ունեն Հ-ի՝ նյարդ. համակարգի պլաստիկության բնագավառի հետազոտությունները: Հիմնավորել է օրգանիզմի համար արգելակման շարժընթացի բուժիչ և պահպանող. դերը, մշակել տարբեր պատճառներից առաջացած շոկի կանխորոշման և բուժման նոր մեթոդ: «Ինտերմոզգ» միջազգ. գիտ. կազմ-յան նախագահ (1972–84):

ԽՍՀՄ ԳԱ 1-ին կարգի (1939), Ի. Պ. Պավլովի անվ. (1951) մրց-ներ, Լենինի (2), Աշխ. կարմիր դրոշի, Կարմիր աստղի շքանշաններ, Ի. Պ. Պավլովի անվ. ոսկե (1963) և Յ. Պուրկինյեի անվ. (1975) մեդալներ:

ՀԱՄԲԱԹՅԱՆ Հասմիկ Աշոտի (ծ. 1952), բժիշկ-ֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ-ր (1998), պրոֆ. (1999): Արփիկ ***Հասրաթյանի*** քույրը: ԵՊՀՀ դեղագիտ. ֆակ-ի դեկան (1999–ից): Աշխ-ները վերաբերում են հարվահանագեղձ–պարաթիորմոն–կալցիում համակարգի դերին՝ հիպոթալամո-նյարդահիպոֆիզային համակարգի գործունեության մեջ:

ՀԱՄԲԱԹՅԱՆ Մորուս (Մարգար) Ստեփանի (1902–1979), պատմաբան-բանասեր: Բանասիր. գիտ. թեկնածու (1935), ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1963): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): Մուրադ ***Հասրաթյանի*** հայրը: 1937-ին եղել է Մոնղ-ի, 1964–75-ին՝ ՀՊՊԹ տնօրեն: Հեղինակ է պատմ., ինագիտ., ճարտ. ուսումնասիրությունների: Թարգմանել է Սայաթ-Նովայի ոչ հայ. խաղերը, կազմել, խմբագրել և ծանոթագրություններով հրատարակել է նրա երգերի ժող-ը (1963):

ՀԱՄԲԱԹՅԱՆ Մուրադ Մարգարի (Մորուսի, ծ. 1935), ճարտ., ճարտ-յան պատմաբան: Մորուս ***Հասրաթյանի*** որդին: Ճարտ-յան դ-ր (1993), պրոֆ. (2003): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006): Ուսումնասիրել է վաղմիջնադար. հուշարձանների (Դդմաշեն, Տաշիր, Գրիգորիսի դամբարան ևն), նաև Դադիվանքը, Գոչավանքը ևն: Հեղինակ է «Այունիքի XVII–XVIII դարերի ճարտարապետական համալիրները» (1973), «Մեղրու շրջանի հուշարձանները» (1987), «Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը» (1992), համահեղ.՝ «Երևան» (ռուս., 1968), «Հայաստան. քրիստոնեական ճարտարապետության 1700 տարին» (2001), «Սաղմոսավանք» (2002), «Հայ արվեստի պատմություն» (2009) և այլ աշխ-ների: ՀՀ Պետ. մրց. (2009):

ՀԱՄԲԱԹՅԱՆ Ռուբեն Գրիգորի (1943–2017), ճարտ.: Գրիգոր ***Հասրաթյանի*** որդին: 1991–97-ին՝ Երևնորոգնախագիծ ինստ-ի տնօրեն: Համահեղինակ է Կապանի 2 թաղամասերի (1981–86), Ջորակերտի ձախափնյա (1989–91) կառուցապատման, Գյումրիի (1982), Երևանի «Էրեբունի» (1983, Սոֆիայի «Բիենալե-87»-ի մրց.) օդանավակայանների և այլ նախագծերի:

Երիտասարդ ճարտ-ների ստեղծագործության (1977), «Տարվա լավագույն կառույց» (1984) համամիութ. ստուգատեսների դափնեկիր:

ՀԱՄԲԱԹՅԱՆ Սուրեն Նավասարդի (1910–1973), դեղաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1956), պրոֆ. (1957): Աշխ-ները վերաբերում են նոր դեղամիջոցների և պատրաստուկների ստացման տեխնոլոգիաների մշակմանը:

ՀԱՄԲԱԹՅԱՆ Վարդան Սերգեյի (1917–2001), հայ ճարտարագետ-շինարար, գնդ. (1964): Աշխ-ները վերաբերում են միջուկ. և այլ տեսակների զենքի կործանիչ ազդեցությունից պաշտպանող կառույցների կրող կոնստրուկցիաների հաշվարկին:

ՀԱՄՈՒԱ, ժողդ Հս. Նիգերիայում (24 մլն, 2010, թվով՝ 2-րդը), Հվ. Նիգերում (5,6 մլն) ևն: Ընդհ. թիվը՝ 31,5 մլն: Խոսում են հասուա լեզվով: Հիմնականում սուննի մահմեդական են:

ՀԱՄՈՒՆՅԱՆ Անտոն, **Անտոն Պետրոս Թ** (1809–1884), եկեղեց. գործիչ: Եղել է Անարզաբայի (Կիլիկիա) հայ կաթոլիկ համայնքի եպս., 1846–47-ին՝ Կ. Պոլսի կաթոլիկ հայերի պատրիարք, 1847-ից՝ կաթոլիկ հայերի կաթողիկոս: Եպիսկոպոս. աթոռներ է հաստատել Կ. Պոլսում, Հալեպում, Կիլիկյան Հայաստանում (Մարաշ, Ադանա), Դիարբեքիրում: 1850-ական թթ-ին ձևավորված «Հասունյան կուսակցությունը» դավանաբան. պայքար է ծավալել Էջմիածնի կաթողիկոսության, Կ. Պոլսի պատրիարքարանի դեմ և դավանափոխել բազմաթիվ հայերի:

ՀԱՎԱԼՈՒՄՆԵՐ, հավալուսնանմանների կարգի ջրլող թռչունների ընտանիք: Հայտնի է 7 տեսակ՝ առավելապես արևադարձներում և մերձարևադարձներում, ՀՀ-ում՝ 2՝ գանգրափետուր և վարդագույն Հ.: Երկ.՝ 1,3–1,8 *մ*: Ապրում են լճերում, լճակներում և ծովերի ափամերձ շրջանում: Բնադրում են գաղութներով: Մնվում են ձկներով:

ՀԱՎԱԿԱՏԱՐ (Amaranthus), **գիմել**, հավակատարազգիների ընտանիքի առավելապես միամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 60 տեսակ՝ տաք և բարեխառն գոտիներում, ՀՀ-ում՝ 6՝ սպիտակ, դիմակավորված, սովոր., կանաչահասակ, թելուկատերև (տարածված են գրեթե բոլոր մարզերում), հուրանավոր (միայն Լոռու մարզում): Մոլախոտ., հատիկ., բանջարեղենային Հ-ները գեղազարդիչ են: Բարձր սննդարարության և հեշտ աճեցման շնորհիվ մշակում են մի շարք երկրներում (հատկապես՝ արևադարձ.):

ՀԱՎԱՄՐԳԱԶԳԻՆԵՐ (Ericaceae), երկշաքիլների դասի մշտադալար բույսերի ընտանիք: Թփեր են, հազվադեպ՝ կիսաթփեր, լիաններ և ծառեր: Հայտնի է 3000 տեսակ (մոտ 100 ցեղ)՝ 2 կիսազնդերում: Հ. են ***հավամրգին***, լավդանոնը, արջխաղողը, մրտավարդը:

ՀԱՎԱՄՐԳԻ (Calluna), հավամրգազգիների ընտանիքի մշտադալար բույսերի ցեղ: Հայտնի է 1 տեսակ՝ սովոր. Հ.՝ Եվրասիայում, Հս. Աֆրիկայում, Ամերիկայում: Մշտադալար թուփ է. աճում է սոճու անտառում, տորֆ. ճահճուտներում՝ առաջացնելով հոծ մացառուտներ: Մեղրատու է, գեղազարդիչ:

ՀԱՎԱՅԱՆ ԼԵԶՈՒ, **հավաի**, ավստրոնեզ. լեզվաընտանիքի մալայա-պոլինեզյան խմբի լեզու: ԱՄՆ Հավայի նահ-ի պաշտոն. լեզուներից: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՀԱՎԱՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ (Hawaiian Islands), **Սանդվիչյան կղզիներ**, կղզեխումբ Խաղաղ օվկ-ի կենտր. մասում: Ներառում է շուրջ 24 կղզի (Հավայի, Մաույի, Մոլոկայի, Օահյու ևն), որոնք ստորջրյա հրաբխ. լ-շղթայի գագաթներ են: Բարձր.՝ մինչև 4205 *մ*: Կան գործող հրաբուխներ (Մաունա Լոա, Կիլաուեա): Հանգստի և զբոսաշրջության գոտի է, կան կլիմ. առողջարաններ:

ՀԱՎԱՅԱՅԻՆԵՐ, պոլինեզ. ժողդ ԱՄՆ-ում, Հավայան կղզիների հիմն. բնակիչ-

ները: Ընդհ. թիվը՝ 401,2 հզ. (զտարյուն Հ–ի թիվը 1 հզ–ից պակաս է.): Խոսում են անգլ., հավայան կրեոլերեն, մի մասը՝ հավայերեն: Բողոքական են:

ՀԱՎԱՅԻ (Hawaii), 1. **Մեծ կղզի**, խոշորագույնը *Հավայան կղզիներում*: Տարածքը՝ 10,4 հզ. *կմ²*, բն.՝ 186,7 հզ. (2011): Գոյացել է 5 հրաբուխների (Մաունա Կեա, Մաունա Լոա, Կիլաուեա, Հուալալաի, Կոհալա) կատարների միացմամբ: Գլխ. քաղաքը՝ *Հիլո*: Գործում է հրաբխագիտ. կայան:

2. ԱՄՆ նահց Հավայան կղզիներում: Տարածքը՝ 16,6 հզ. *կմ²*, բն.՝ 1,4 մլն (2014): Վարչ. կենտրոնը՝ *Հոնոլուլու*:

ՀԱՎԱՆԱ (La Habana), Կուբայի մայրաքաղաքը (1902–ից)՝ *Կուբա կղզու* հս–արմ–ում՝ Մեքսիկ. ծոցի ափին: Բն.՝ 2,1 մլն (2012): Երկրի տնտ., քաղ. և մշակութ. կենտրոնն է, գլխ. նվինգստ–ն ու տրանսպորտ. խոշորագույն հանգույցը: Ունի միջազգ. օդանավակայան (Խոսե Մարտիի անվ.): Կան կարի, տեքստիլ, մետաղամշակման, քիմ., սննդամիս արդ–յան և այլ ձեռն–ներ: Գործում են բազմաթիվ գրադարաններ, թանգարաններ, թատրոններ:

Հ. հիմնադրել է իսպանացի նվաճող Դիեգո Վելասկեսը մոտ 1515–ին կղզու հվ. ափին: 1519–ին տեղափոխել են կղզու հս–արմ. մասը: XVI–XVII դդ–ում Հ–ի վրա հաճախակի հարձակվել են անգլիացի, ֆրանսիացի և հոլանդացի ծովահենները: XVI դ–ի վերջից Կուբայի վարչ. կենտրոնն է: 1762–63–ին գրավել է Անգլիան, 1898–1902–ին՝ ԱՄՆ:

ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՏՈՒԹՅՈՒՆ x **պատահական մեծության,** այնպիսի P(x) ZO ֆունկցիա, երբ կամայական a և b–ի համար a < x < b անհավասարության հավանականությունը հավասար է

$$\int_a^b P(x)dx,$$

որտեղ P(x) ֆունկցիան բավարարելու է հետևյալ պայմանը՝

$$\int_{-\infty}^{+\infty} P(x)dx = 1:$$

ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, որոշակի պայմաններում (որոնք կարող են կրկնվել անսահմանափակ թվով) որևէ պատահույթի հայտնվելու հնարավորության աստիճանի թվային բնութագրիչ: Փոփոխվում է 0–1 միջակայքում: Տես նաև *Հավանականությունների տեսություն*:

ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, *մաթեմատիկայի* բաժին. ուսումնասիրում է մեծ թվով պատահական գործոնների, մեծությունների և շարժընթացների փոխազդեցության դեպքում առաջացող օրինաչափությունները, որոնք հնարավորություն են տալիս հայտնի պատահույթների հավանականությունների միջոցով գտնել այդ պատահույթների հետ կապ ունեցող անհայտ պատահույթների հավանականությունները: Հ. տ–յան մաթ. ապարատն օգտագործում են գիտ–յան և տեխնիկայի զանգված. երևույթներն ուսումնասիրելու համար: Հ. տ–յան մեթոդները կարևոր դեր են խաղում՝ վիճակագր. տվյալները մշակելու ժամանակ:

ՀԱՎԱՆԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, հիմնադրվել է 1728–ին Կուբայում: Արմ. կիսագնդի 1–ին նմանատիպ հաստատություններից է: Վերակազմավորվել է 1960–ին: 2015–ին ուներ շուրջ 60 հզ. ուսանող:

ՀԱՎԱՆՄԱՆՆԵՐ (Galliformes), **հավազգիներ**, թռչունների կարգ: Միջին մեծության թռչուններ են. ամենափոքրի կ. զ.՝ 80–120 *գ* (լոր), ամենախոշորինը՝ 6 *կգ* (խլահավ): Հայտնի է մոտ 250 տեսակ: ՀՀ–ում հանդիպում է 2 ընտանիք՝ մայրեհավերի՝ 1 տեսակով (կովկաս. մայրեհավ), և փասիանների՝ 6 տեսակով (վայրի հնդկահավ, քարակաքավ, թուրաջ, մոխրագույն կաքավ, լոր, անդրկովկաս. փասիան): Տարածված են ամենուր: Ունեն տնտ. մեծ նշանակություն, նաև սպորտ. որսաթռչուն են: Օգտագործում են միսը, փետուրները: 60 տեսակ գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՀԱՎԱՍԱՐԱԲԱՇԽՄԱՆ ՕՐԵՆՔ, դաս. *վիճակագրական ֆիզիկայի* թեորեմ, ըստ որի՝ հավասարակշիռ վիճակում համակարգի յուրաքանչյուր ազատության աստիճան ունի kT/2 միջին էներգիա, որտեղ k–ն Բոլցմանի հաստատունն է, T–ն՝ բացարձակ ջերմաստիճանը:


ՀԱՎԱՍԱՐԱԳԾԵՐ, գծեր, որոնք աշխարհագր., երկրբ. քարտեզների, կտրվածքների և գրաֆիկների վրա իրար են միացնում որևէ մեծության հավասարարժեք կետերը: Հ–ի օգնությամբ ցույց են տրվում երևույթների քանակ. բնութագրումների փոփոխությունը ժամանակի ընթացքում (Երկրի մագնիսականության բաղադրիչների դարավոր փոփոխությունները), շարժման քամու արագությունը, տևողությունը (ձնածածկ օրերի թիվը), կրկնությունը կամ հավանականությունը (ամպրոպների կրկնությունը):

ՀԱՎԱՍԱՐԱԹԵՎՆԵՐ (Homoptera), **միակերպաթևներ**, միջատների կարգ: Բաժանվում է ցիկադների, տերևալվիկների, սպիտակաթևիկների, լվիճների, կոկցիդների, որդանների և վահանակիրների: Երկ.՝ 0,5–65 *մմ*: Հայտնի է ավելի քան 30 հզ. տեսակ, ՀՀ–ում՝ ավելի քան 450, առավել տարածված և վնասակար են խնձորենու, տանձենու, փշատենու տերևալվիկները, սովոր. փրփրացիկադը, վարդենու, խաղողի թզուկ ցիկադները, կեղծ վահանակիրը, ջերմատնային սպիտակաթևը: Որոշ Հ. արտազատում են քաղցր, կպչող հյութ (մեղրացող), որի վրա զարգանում են մրիկասնկերը: Որոշները բույսերի վիրուս. հիվանդություններ տարածողներ են:

ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՎԱԾ ՇԱՐԺԸՆԹԱՑ (ֆիզ.), անվերջ դանդաղ շարժընթաց, որտեղ թերմոդինամիկ. համակարգն անցնում է իրար անվերջ մոտ մի շարք հավասարակշիռ վիճակներով: Հակադարձելի է:

ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅԱՆ ՕՐԳԱՆՆԵՐ, ընկալում են մարմնի դիրքի փոփոխությունները տարածության մեջ, նաև արագացման ազդեցությունն օրգանիզմի վրա: Անողնաշարների Հ. օ. *ստատոցիստներն* են, ողնաշարավորներինը և մարդունը՝ անդաստակային ապարատը:

ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆ (ֆիզ.), 1. ուժերի ազդեցության տակ գտնվող մեխ. համակարգի վիճակ, որում նրա բոլոր կետերը դիտարկվող հաշվարկման համակարգի նկատմամբ հանգստի վիճակում են:



2. Թերմոդինամիկ. համակարգի Հ. բնութագրվում է նրա բոլոր մասերի ջերմաստիճանների, ճնշումների ու մակրոսկոպիկ այլ հարաչափների հավասարությամբ և ամբողջ համակարգի էնտրոպիայի առավելագույն արժեքով: Յուրաքանչյուր մեկուսացված համակարգ ժամանակի ընթացքում հասնում է թերմոդինամիկ. Հ–յան:

ՀԱՎԱՍԱՐԱՈՑ ԽԵՅԳԵՏՆԱԿԵՐՊՆԵՐ, բարձրակարգ խեցգետնակերպների ենթադասի կարգ: Երկ.՝ 10–50 *մմ*: Հայտնի է մոտ 4500 տեսակ: Ապրում են առավելապես ծովերում, նաև քաղցրահամ ջրերում (ջրային իշուկ) և ցամաքում (նեպուկներ): Մի շարք տեսակներ ձկնեղի կեր են: Ծով. խավարասերը վնասում է ցանցը և բռնված ձկանը, որոշները շաղափուկ են:

ՀԱՎԱՍԱՐԱՉԱՓ ՇԱՐԺՈՒՄ, կետի շարժում, երբ նրա v արագության թվային մեծությունը հաստատուն է: Պինդ մարմինը կարող է կատարել համընթաց Հ. շ., որի դեպքում մարմնի բոլոր կետերի արագությունների մեծությունները հաստատուն են:

ՀԱՎԱՍԱՐԱՉԱՓ ՓՈՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ, կետի շարժում, երբ նրա ω_z շոշափող արագացումը (ուղղազիծ Հ. փ. շ–ման դեպքում՝ ամբողջ ω արագացումը) հաստատուն է: Պինդ մարմինը կարող է կատարել համընթաց Հ. փ. շ., որի դեպքում ասվածը վերաբերում է մարմնի յուրաքանչյուր կետին:

ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ սոցիալական, հաս–յան վիճակի որոշակի բնութագրիչ, բազմաթիվ սոցիալ. գաղափարների բաղկացուցիչ մաս: «Հ.» հասկացությանը տարբեր դարաշրջաններում տրվել է սոցիալ. տարբեր բովանդակություն: Թե՛ ստրուկների ապստամբությունների, թե՛ միջնադար. գյուղաց. շարժումների նպատակը Հ. հաստատելն էր: Հայ իրականության մեջ հայտնի են Պավլիկյան և Թոնդրակյան շարժումները: *Սյոռիցիզմը* մշակել է բոլոր մարդկանց Հ–յան գաղափարը: Բնական իրավունքի տեսաբանները: Իրավ. Հ–յան սահմանափակությունը քննադատել են XIX–XX դդ–ի սոցիալ. մտքի տարբեր ուսմունքներ՝ պահանջելով սեփականության, տնտ. Հ.: Արդի հաս–յան մեջ քննադատվել են բացարձակ Հ–յան պարզունակ սկզբունքները. առավել տարածված են այն հայեցակարգերը, որոնք հիմնավորում են նոր կյանք մտնող սերունդների համար հավասար պայմանների անհրաժեշտությունը:

ՀԱՎԱՍԱՐՈՒՄ, արգումենտի այնպիսի արժեքներ գտնելու խնդրի մաթ. գրառում, որոնց դեպքում տրված 2 ֆունկցիաների արժեքները հավասար են: Արգումենտները, որոնցից կախված են այդ ֆունկցիաները, անվանում են անհայտներ, իսկ այն անհայտների արժեքները, որոնց դեպքում այդ ֆունկցիաների արժեքները հավասար են, անվանում են լուծումներ (արմատներ): Լինում են հանրահաշվ. Հ–ներ (օր.՝ $\bar{x}^2 = 2$) և ոչ հանրահաշվ. Հ–ներ, որոնց անվանում են **տրասցենդենտ** Հ–ներ (օր.՝ $2^x = X$): Տես նաև *Գծային հավասարումներ, Խորանարդային հավասարումներ, Քառակուսի հավասարումներ*:

ՀԱՎԱՍԻ (Մարկոսյան Արմենակ Պարսամի, 1896–1978), աշուղ: ՀԽՍՀ ժող. ար–

տիստ (1967): Կուրացել է 4 տարեկանում: Ստեղծել է աշուղ. տաղաչափության նոր տարբերակներ: Հեղինակ է սիր., բարոյախոս., վիպ. և հայրենասիր. թեմաներով շուրջ 3600 երգի («Ինչ ասեմ յարիս», «Զուր կերթաս», «Եղնիկի պես», «Ինչո՞ւ սիրեցիր» ևն), մոտ 2000 քառյակի, երգախառն հեքիաթների: Լույս են տեսել Հ–ու «Բուրմունք» (1950), «Երգեր» (1958), «Իմ քնարը» (նոտագրված, 1961), «Հասմիկ» (1975), «Երգեր առանց նվագակցության» (1983) երգերի ժող–ները:

ՀԱՎԱՏ, ներքին, սուբյեկտիվ համոզմունք ինչ–որ բանի ստույգության, ճշմարտացիության վերաբերյալ: Կրոնում՝ անձն. վստահություն և հավատարմություն Աստծուն և նրանից բխող Հայտնության առանց պայմանի ընդունում թեիստ. կրոններում (հուդայականություն, քրիստոնեություն, մահմեդականություն):

ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐ, իրերի, կենդանիների, բույսերի, երկն. մարմինների, բնության երևույթների հետ կապված կրոնապաշտամունք. դրսևորումների համակարգ: Երբեմն Հ. են համարվել պաշտամունքի առարկաները: Կենդանապաշտ., բուսապաշտ. Հ–ի բազմաթիվ դրսևորումներ հայ ժողդ–ի մեջ հարատևել են մինչև XIX դ–ի վերջ–XX դ–ի սկիզբը:

«ՀԱՎԱՏԱՄՄԵՔ», ազգ., հոգևոր, մշակութ. ամսաթերթ (1993–ից, Ս. Պետերբուրգ՝ հայ., ռուս.): Տեղի Հայ եկեղեց. համայնքի հրտ–յուն: Հետխորհրդ. 1–ին հայ. թերթն է ՌԴ–ում: Խմբ.՝ Արմեն Մերուժանյան:

ՀԱՎԱՏԱՐՄԱԳԻՐ, պաշտոն. փաստաթուղթ, որով հավաստվում է դիվանագիտ. ներկայացուցչի լիազորությունը մեկնած երկրում: Հ. ստորագրում և հանձնում է պետության գլխ. ղեկ–ը (ՀՀ–ում՝ նախագահը) և սովորաբար ամրապնդվում է ԱԳ նախարարի ստորագրությամբ: Հ. տրվում է դեսպաններին ու դեսպանորդներին:

ՀԱՎԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ, ինկվիզիցիա (լատ.՝ inquisitio – հետաքննություն), կաթոլիկ եկեղեցու դատ. և քննչ. կազմ–յուն, որն ստեղծվել է կաթոլիկ եկեղեցու հակառակորդներին հալածելու և պատժելու համար: Գործել է XIII–XIX դդ–ում Արմ. Եվրոպայի գրեթե բոլոր երկրներում: Հատկապես մոլեգնել է Իսպանիայում: XVI–XVII դդ–ում Հ. հակառեֆորմացիայի դեմ պայքարի հիմն. միջոցներից էր: Դատավորներին նշանակել է Հռոմի պապը, որոնց դատավճիռն իրականացրել են աշխարհիկ դատարանի մարմինները: 1542–ին Հռոմի կուրիան ստեղծել է Հռոմ. Հ.՝ «Սուրբ միաբանությունը», որը կարգավորել է Հ–յան գործունեությունը:

ՀԱՎԱՏՈ ՀԱՆԳԱՆԱԿ, քրիստ. հավատամքի հակիրճ շարադրանք, որն աներկբա ընդունում և խոստովանում են բոլոր քրիստ. եկեղեցիները: Հ. հ. ձևակերպվել է Նիկիայի (325) և լրացվել Կ. Պոլսի 2–րդ (381) տիեզերաժողովներում: Հետագայում կաթոլիկ եկեղեցին Հ. հ–ին ավելացրել է ֆիլիոկվե («և Որդու»), որը չի ընդունել ուղղափառությունը: Քրիստ. Հ. հ–ները սկզբնապես (II–III դդ.) օգտագործվել են Մկրտության խորհրդի ժամանակ: Ավելի ուշ (V դ.) Հ. հ. գործածվել է Սբ Պատարագի մեջ՝ որպես հավատացյալների համար ուղղափառ դավանանքի հիշեցում: Քրիստոնեության հիմնական Հ. հ–ներն են Առաքելական հանգանակը, Նիկիական հանգանակը (գործածում է ՀԱԵ), Աթանասյան հանգանակը, Նիկիո–Կոստանդնուպոլսո հանգանակը: Համաշխ. կրոններից Հ. հ. կիրառելի է մասամբ իսլամի համար՝ Աստծու եզակիության և Մուհամմեդ մարգարեի բարի առաքելության առումով:

ՀԱՎԱՐԻՔԻ ԲԱՐԲԱՌ, տես *Արեշ–Հավարիքի բարբառ*:

ՀԱՎԱՔԻՉ, կոլեկտոր (միջնադար. լատ.՝ collector), 1. (տեխ.) **Էլեկտրական մեքենայի Հ.**, հաճախության մեխ. փոխակերպիչ, որը կառուցվածքայնորեն միացվում է էլ. մեքենայի փաթույթին (ռոտորին): 2. **Տրանզիստորի Հ.** (հավաքչային տիրույթ), երկբևեռ տրանզիստորի տիրույթ, որտեղ նրա բազայից հավաքվում է լիցքակիրների մեծամասնությունը: 3. **Էլեկտրավակուումային սարքի Հ.**, էլեկտրոնների հոսքն ընդունող կամ որսացող սարքվածք (էլեկտրոդ, էլեկտրոդների համակարգ ևն): 4. **Կոյուղային Հ.**, կոյուղու ցանցի տեղամաս, որտեղ հավաքվում են կոյուղացվող ավազանի կեղտաջրերը: 5. Որոշակի տեխ. սարքերի անվանում:

ՀԱՎԱՔՉՈՒԹՅՈՒՆ, մարդու տնտ. գործունեության նախնական ձևերից՝ սննդի և դեղամիջոցների (վայրի բույսեր, արմատներ, պտուղներ, թռչունների ձվեր, մեղր ևն) հավաքելը: Նախնադար. հասարակարգում (հատկապես՝ քարի դարում) որսորդության և ձկնորսության հետ եղել է բնության պատրաստի արդյունքների յուրացման հիմն. տնտեսաձևը:

ՀԱՎԵԼ (Havel) Վացլավ (1936–2011), Չեխոսլովակիայի նախագահ՝ 1989–92–ին, Չեխիայի նախագահ՝ 1993–2003–ին, դրամատուրգ, այլախոհ: 1968–ին՝ «Անկախ գրողների ակումբի» նախագահ, ավելի ուշ՝ երկրում սկիզբ առած մարդու իրավունքների պաշտպ–յան շարժման ղեկ–ներից: 1989–ից՝ «Քաղաքացիական ֆորում» շարժման առաջնորդ: Հեղինակ է «Պուրակային տոնակատարություն» (բեմ.՝ 1963, հրտ.՝ 1964), «Ծանուցում» (1965), «Տեսակցություն» (1976) և այլ երգիծ. դրամաների: «Մեծ դատարկություն» (բեմ.՝ 1990) կոմեդիան այլախոհի հոգեբ. ճգնաժամի մասին է:

ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔ, ապրանքի արժեքի այն մասը արժեքի աշխ. տեսության մեջ, որն ստեղծվում է վարձու աշխատողների չվճարվող աշխ–ով և յուրացվում է:

ՀԱՎԵԼՅԱԼ ՕՐԳԱՆՆԵՐ բույսերի, ադվենտիվ օրգաններ, բողբոջներ, արմատներ և այլ օրգաններ, որոնք գոյանում են բույսի այն մասերում, որտեղ սովորաբար չեն լինում: Հ. օ. առաջանում են հասուն օրգանների պարենքիմում (պերիցիկլ, արմատի և ցողունի ֆլոեմա, տերևի պարենքիմ): Հավելյալ բողբոջները հաճախ գոյանում են ոչ թե տերևաձոցերում և ցողունի գագաթում, այլ միջհանգույցների, արմատների կամ տերևների, հավելյալ արմատները՝ ցողունի կամ տերևի վրա: Հավելյալ բողբոջներն առաջանում են տերևի ատամիկներում, ապա առանձնանում են որպես ինքնուրույն բույսեր:

ՀԱՎԵՍԻ (Հովհաննիսյան Թադևոս, 1831–մ. թ. անհտ), աշուղ: Աշակերտել է Մալուլին, Ղեյրաթոն: Գրել է շուրջ 200 հայ. երգեր (ըստ բանասեր Ա. Մխիթարյանի, որն էլ Հ–ի երգերի մի փունջ հրատարակել է «Սոխակ Հայաստանի» երգարանի 4–րդ հ–ում):

ՀԱՎԵՐ ընտանի, հավանմանների կարգի թռչուններ: Սերում են վայրի բանկիվյան հավերից: Գղտ. թռչուններից ամենաբազմաքանակն են: Հիմն. ցեղերն են լեգհոռները, սպիտակ պլիմուտրոկը, ռոդ այլենդը, մոսկովյանը, նյու հեմփշիրը, շերտավոր պլիմուտրոկը, կոռնիշը, բրոյլերը: Բաժանվում են ձվատու, մսաձվատու և մսատու, նաև գեղազարդիչ ու կովաններ ցեղերի: Առավել տարածված են ձվատու ցեղերը: Մսատու ցեղերի Հ–ից են կոռնիշը, կոխինխինը, լանգշանը: ՀՀ–ում Հ–ի բուծմամբ զբաղվում են գյուղաց. և գյուղաց. կոլեկտիվ տնտ–յունները, թռչնաբուծ. ֆաբրիկաները, նաև միջին ու մանր ֆերմեր. տնտ–յունները (Աշտարակի, Էջմիածնի, Եղեգնաձորի, Արարատի տարածաշրջաններում):

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԿՐԱԿ, մշտապես պահպանվող կրակի բոց՝ հերոսների հուշահամալիրներում, գերեզմանոցներում և այլուր: Զոհված հերոսների հիշատակի խորհրդանիշ է: 1–ին Հ. կ. վառվել է 1920–ին Փարիզում՝ Անհայտ զինվորի գերեզմանին, ԽՍՀՄ–ում՝ 1957–ին Լենինգրադում՝ Մարսյան դաշտում՝ «Հեղափոխության մարտիկների» հուշարձանին, 1967–ին Մոսկվայի Կրեմլի պատի մոտ՝ Անհայտ զինվորի գերեզմանին: Հայաստանում Հ. կ. վառվում է Ծիծեռնակաբերդում՝ Մեծ եղեռնի զոհերին նվիրված հուշահամալիրում (1967) և Անհայտ զինվորի գերեզմանին (1985, Երևանի «Հաղթանակ» զբոսայգում):

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՇԱՐԺԻՉ, 1. **առաջին կարգի Հ.** շ., մտացածին, անընդհատ գործող մեքենա, որը, 1 անգամ գործարկվելով, առանց դրսից էներգիա ստանալու, կաշխատեր անսահմանափակ ժամանակ, ինչը հակասում է էներգիայի պահպանման ու փոխակերպման օրենքին, և այդ պատճառով անիրագործելի է: 2. **Երկրորդ կարգի Հ.** շ., մտացածին ջերմ. մեքենա, որը որևէ «անսպառ» աղբյուրից (օվկ–ից, մթն–ից ևն) ստացվող էներգիան ամբողջապես փոխարկում է աշխ–ի, ինչը հակասում է թերմոդինամիկայի 2–րդ օրենքին, և այդ պատճառով այն անիրագործելի է:

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՍԱՌՅՈՒՅԹ, երկրակեղևի վերին մասի ապարների սառեցման երևույթները բնորոշող հասկացություն: Գիտ–յան մեջ կիրառվում է 1927–ից: Սառցագիտ–յան հետագա զարգացման ընթացքում առաջադրվել են ավելի գործածական նոր հոմանիշներ՝ բազմամյա սառցակալած ապարներ և բազմամյա կրիոլիտազոնա:

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՍՅՈՒԺԵՆԵՐ ԵՎ ԿԵՐՊԱՐՆԵՐ, սյուժեներ և կերպարներ ժող. բանահյուսության և գրկ–յան մեջ (Պրոմեթևս, Դոն Կիխոտ, Դոն Ժուան, Քաջ Նազար, Միկիտան Սաքո): Վերցվում են հիմնականում դից–յունից և Աստվածաշնչից: Հ. ս. և կ., որքան էլ ժամանակի ընթացքում փոփոխվում կամ արդիական մեկնաբանություն են ստանում, այնուամենայնիվ, մնում են կայուն:

ՀԱՎԵՐԺՀԱՐՄՆԵՐ, բնության աստվածուհիներ հուն. դից–յան մեջ, որոնք բնակվել են սարերում, անտառներում, ծովերում, աղբյուրներում: Համարվել են *Զևսի* դուստրերը, *Արտեմիսի* և *Դիոնիսոսի* ուղեկիցները:

ՀԱՎԵՐՍՅԱՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐ (անգլիացի անատոմ Կ. Հավերսի անունով, 1657–1702), խողովակավոր խոռոչներ մարդու և բարձրակարգ ողնաշարավոր

կենդանիների ոսկրի հոծ նյութում, որոնցով անցնում են արյունատար անոթներ և նյարդեր:

ՀԱՎԼԱԲԱՐԻ ՏՊԱՐԱՆ, ՌՍԴԲԿ Կովկաս. միութ. կոմիտեի գաղտնի տպարան: Հիմնադրվել է 1903-ին Թիֆլիսի Հավլաբար թաղամասում: 1906-ին ոստիկանությունը բռնագրավել է տպարանը: Այժմ հուշարձան-թանգարան է:

ՀԱՎԼԻՉԵԿ-ԲՈՐՈՎՍԿԻ (Havlíček-Borovský) Կարել (1821–1856), չեխ քաղ. գործիչ, բանաստեղծ, հրապարակախոս: 1846–48-ին ձևակերպել է ավստրո-սլավոնականության սկզբունքները: 1848-ի հեղ-յան սկզբում հիմնադրել է «Նարոդնի նովինի» չեխ. քաղ. լրագիրը: 1851-ին աքսորվել է Բրիքսեն (Տիրոլ): Հեղինակ է «Տիրոլյան էլեգիաներ» (1852, հրտ.՝ 1861), «Սուրբ Վլադիմիրի մկրտությունը» (1848–54, անավարտ, հրտ.՝ 1876), պամֆլետ-բանավիճ. «Կուտնոգորյան ուղերձներ» (1851) գրքի:

«ՀԱՎԿՈՒԲՈՒԹՅՈՒՆ», **հեմերալոպիա**, թույլ լուսավորության (մթնշաղ., գիշեր.) պայմաններում տեսնելու ունակության խանգարում: Պատճառն օրգանիզմում A և B_2 (ռիբոֆլավին) վիտամինների անբավարարությունն է, որը մտնում է աչքի ցանցաթաղանթի ցուպիկների տեսող. ծիրանու բաղադրության մեջ:

ՀԱՎՃԻՉ, **Հավաճիչ**, բք Տայք նահնգ-ի Ազորդաց փոր գվո-ում՝ Ազորդ (այժմ՝ Թորթում) գետի ափին՝ Հավճիչ լ-ան վրա: IX–X դդ-ում՝ բյուզ. զորակայան: Բյուզ. կայսրության թուլացումից (XI դ-ի կես) հետո Հ-ում ստեղծվել է անկախ իշխանություն: Որպես Հ-ի իշխան՝ Արիստակես Լաստիվերտցին հիշատակում է *Հաշտենից* գվո-ի տեր Իվանե Օրբելյանին:

ՀԱՎՆՈՒՆԻՆԵՐ, **Հաւունիք**, **Հանունիք**, հայ նախարար. տոհմ Այրարատ նահնգ-ի *Հավնունիք* գվո-ում: Ըստ Մովսես Խորենացու՝ Հայոց թագավոր *Վաղարշակը* Հ-ին կարգել էր «բազեակիրք և բազեակալ» արքունի պաշտոնին: Վռամական Գահնամակում Հ-ին հատկացված էր 55-րդ «բարձր», իսկ զորանամակում նրանց զորաբաժինը սահմանված էր 300 այր: Հ. աղբյուրներում հիշատակվում են մինչև X դ.:


ՀԱՎՆՈՒՆԻՔ, **Հավունիք**, գվո, Այրարատ նահնգ-ի 4-րդ գվո-ը: Ընկած էր Երասխի ձախափնյակում՝ հս-ից սահմանակցելով՝ Վանանդ և Շիրակ, արլ-ից՝ Արշարունիք, հվ-ից՝ Գաբեղյանք, արմ-ից՝ Աբեղյանք գվո-ներին: *Հավնունի* նախարար. տոհմի ժառանգ. տիրույթն էր (այստեղից էլ՝ անվանումը): Միջնադարում հայտնի էր Կեչվան անունով: XVI դ-ի 2-րդ կեսին նվաճել են օսմ. թուրքերը. կազմել է Կարսի նահնգ-ի Կեչվան գվո-ը: 1878-ին անցել է Ռուսաստանին, 1919–20-ին՝ ՀՀ կազմում: 1920-ին կրկին զավթել է Թուրքիան:

ՀԱՎՐ (Le Havre), ք. Ֆրանսիայում, նախանավակայան (բեռնաշրջանառությունը՝ տարեկան ավելի քան 50 մլն *տ*) Սենի գետաբերանում: Բն.՝ 173 հզ. (2012): Հիմնադրվել է 1917-ին: Գործում է Օվկիանոսագիտ. ինստ.:


ՀԱՎՐԱՆԵԿ (Havránek) Բոգուսլավ (1893–1978), չեխ լեզվաբան, սլավոնագետ: Չեխոսլովակիայի ԳԱ ակադ.: Չեխ. լեզվի ինստ-ի տնօրեն (1946–65): Հեղինակ է չեխ-ին, համեմատ. քերակ-յանը, գր. սլավոն. լեզուների պատմահամեմատ. ուսումնասիրությանը, գործառն. ոճաբանությանը վերաբերող աշխ-ների, նաև «Գրական չեխերենի բառարան»-ի (հ. 1–4,1958–71, համահեղ.): Պրահայի լեզվաբ. խմբակի նախագահ: ՉՍՀ Պետ. մրց. (1957):

ՀԱՎՈՒՅ ԹԱՌ ՎԱՆԵՔ, **Ամենափրկիչ Հավուց թառ**, ճարտ. համալիր ՀՀ Կոտայքի մարզում՝ Գառնիից արլ.՝ Ազատ գետի ափին: Հայկ. միջնադար. մշակույթի կենտրոններից է: Բաղկացած է 2 հուշարձանախմբից: Առաջինի գլխ. եկեղեցին (XIII դ.) ներքուստ՝ խաչաձև, արտաքուստ՝ ուղղանկյուն, 4 անկյունում ավանդատներով հորինվածք է: Քանդված են գմբեթն ու ծածկը: Հվ-ից կից են 2 միանավ մատուռներ (կիսավեր): Երկրորդը XVIII դ-ի 1-ին կեսին հիմնովին վերակառուցվել է, որի համար օգտագործվել են 1013-ին *Գրիգոր Մագիստրոս Պահլավունու* կառուցած Սբ Ամենափրկիչ եկեղեցու և վանքի քառամույթ գավթի քարերը: Գավթի ավերակի վրա 1721-ին հիմնադրվել է Սբ Կարապետ եկեղեցին:

ՀԱՏԱԾ ԲՈՒՐԳ, բուրգի հիմքին զուգահեռ հարթությամբ հատած երկրչփ. մարմին: Հ. բ-ի ծավալը՝ $V = 1/3h(S_1 + \sqrt{S_1S_2} + S_2)$, որտեղ S_1-ը և S_2-ը հատույթների մակերեսներն են, h-ը՝ հատած բուրգի բարձր-յունը:



ՀԱՏԱԾ ԿՈՆ, կոնի հիմքին զուգահեռ հարթությամբ հատած երկրչփ. մարմին: Հ. կ-ի ծավալը՝ $V = 1/3\pi h(r_1^2 + r_1r_2 + r_2^2)$, որտեղ r_1, r_2-ը հատույթների շառավիղներն են, h-ը՝ հատած կոնի բարձր-յունը:



ՀԱՏԱԿ, շենքի (կառույցի) կառուցվածք. տարր, որը կրում է մարդկանց տեղաշարժվելուց, բեռների տեղափոխումից, նաև շենքում եղած կահույքի ու սարքավորումների ներգործությունը: Կազմված է հիմքից (միջհարկային ծածկեր կամ գրունտ) և ծածկից (Հ-ի վերին շերտը), որը կարող է պատրաստված լինել միաձույլ կամ հոծ (ցեմենտե, ասֆալտբետոնե ևն), թերթային և գլանափաթեթ. նյութերից (լինոլեում, խավոտ ծածկեր ևն), հատային նյութերից (մանրահատակ, խեցե սալիկներ ևն):

ՀԱՏԱՊՏՂԱՏՈՒ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐ, **հատապտղավորներ**, հյութալի պտուղներով բազմամյա թփերի, կիսաթփերի և խոտաբույսերի խումբ: Լայնորեն ածեցվում են մորենին, հաղարջենին, կոկոշենին, նաև խոշորապտուղ լոռամրգին, մոշենին, թթուհատին, չիչխանը ևն: Հ. մ-ի պտուղները պարունակում են մարդու համար կարևոր օրգ. թթուներ, շաքար, հանք. աղեր, վիտամիններ: Որոշ Հ. մ. (հապալասենի, մորենի, սևապտուղ արոսենի) դեղաբույսեր են:

ՀԱՏԲԵՔԻՉ (Coccothraustes coccothraustes), սերինոսների ընտանիքի թռչուն: Նստակյաց է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 18, թևերի բացվածքը՝ 29–33 *սմ*, կ. զ.՝ 49–57 *գ*: Թաքնվող թռչուն է: Ապրում է փոքր խմբերով՝ սաղարթախիտ անտառներում, պտղատու այգիներում: Մնվում է սերմերով, պտուղներով, բողբոջներով, որոշ անողնաշարներով: Գեղագիտ. արժեք ունի:

ՀԱՏԵՐԻԱ, (Sphenodon punetatus), կնճիթագլուխ սողունների կարգի միակ պահպանված ներկայացուցիչը: Արտաքինից նման է խոշոր մողեսի: Երկ.՝ մինչև 75 *սմ*: Մեջքի և պոչի երկ-յամբ ունի եռանկյունաձև թեփուկներից կատար: Ապրում է մինչև 1 *մ* խոր-յամբ ըներում: XIX դ-ի վերջին ոչնչացվել է, պահպանվել է միայն հատուկ արգելոցներում: Գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում: Բազմացվում է Սիդնեյի կենդր. այգում:

ՀԱՏԻԿԱԲՆԱԿԱՎՈՐ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐ, ընդավորների ընտանիքի բույսեր, որոնք մշակում են սպիտակուցներով հարուստ հատիկ (սերմ) ստանալու համար: Հ. մ-ի հատիկը պարունակում է 20–40 % սպիտակուց (չոր նյութի հաշվով), 25–60 % ածխաջուր, 2–2,5 % ճարպ (սոյայում՝ 19–25 %), ֆերմենտներ, վիտամիններ: Հ. մ. բաժանվում են՝ սննդ. հատիկաընդավորների (ոլոռ, սովոր. լոբի, ոսպ, տափոլոռ, սիսեռ) և կերային հատիկաընդավորների (վիկ, կերային բակլա, լուպին): Հ. մ-ի հատիկներից արտադրում են ալյուր, ձավար, պահածոներ, անասնակեր, այն նաև հումք է ոչ մթերային նշանակության տարբեր ապրանքների (սոսինձ, պլաստմասսա) համար:

ՀԱՏԻԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Արեգակի վրա (աստղագիտ.), Արեգակի լուսոլորտի՝ աստղադիտակով դիտվող հատիկավոր կառուցվածքը: Խիտ տեղակայված մեծաթիվ հատիկների խմբեր են՝ 500–1000 *կմ* տրամագծով մեկուսացած վառ գոյացումներ, որոնցով ծածկված է Արեգակի ողջ սկավառակը: Առանձին հատիկներն առաջանում, աճում և քայքայվում են 5–10 *ր*-ում:

ՀԱՏԻՄ, **Հաղիս, Շամիրամի լեռ**, հրաբխ. լ-զանգված ՀՀ Կոտայքի մարզում՝ Կոտայքի սարավանդի հս-արլ-ում: Բարձր.՝ 2528 *մ*: Կոնաձև է, լանջերը կտրտված են խոր ձորակներով: Կազմված է պալեոգենի լավաներից ու պեղլիտներից: Հվ. ստորոտից սկիզբ են առնում Քառասունակն աղբյուրները: Լեռան վրա են Շամիրամի (կամ Բյոռօղլու) բերդի ավերակները:

ՀԱՏՈՅԱՄԱ, Իտիրո (1883–1959), Ճապոնիայի վարչապետ՝ 1954–56-ին: 1956-ի հոկտ. 19-ին ստորագրել է խորհրդա-ճապոն. համատեղ հռչակագիր՝ պատերազմ. իրադրության կասեցման և դիվանագիտ. հարաբերությունների վերականգնման վերաբերյալ:

ՀԱՏՎԱԾ (մաթ.), 1. ուղղի վրա թվերի կամ կետերի բազմություն՝ a և b թվերի կամ կետերի միջև՝ ներառյալ այդ a և b կետերը. նշանակվում է [a, b]: Տես նաև *Սեգմենտ*: 2. Տարածության մեջ կամ ժամանակի ընթացքում չափվող ինչ-որ մեծության մաս:

ՀԱՏՏԵՃՅԱՆ Ռոպեր Ավետիսի (ծ. 1926), գրող, խմբ., հրապարակախոս: 1948–72-ին՝ «Սան» (Ստամբուլ) պարբ-ի, 1967-ից՝ *«Մարմարա»* օրաթերթի խմբ.: Հեղինակ է «Յակոբ Պարոնեանի մտերմութեան մէջ» (1965) մենագրության, «Պտոյտ հայ բանաստեղծութեան պարտէզին մէջ», «Ասիկա Այր է» (երկուսն էլ՝ 2005), «Հիւանդութեան օրեր», «Զրոյց հինցած գրիչի մը հետ» (երկուսն էլ՝ 2011) հոդվածների, «Կեանքի մը երեք կիրակիները» (1959), «Սահը անյս է արդեօք» (1994) պիեսների, «Բառասխալ» (1972) պատմվածքների ժող-ների, «Առաստաղը» (1983), «Առաստաղին միւս կողմը» (2000) վեպերի, «Օրագրիս տասնըհինգ էջերը» (1977) հուշագրության և այլ գործերի:

«Ալեք Մանուկյան» գր. մրց. (1983), ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» (1990), ՀՀ «Մովսես Խորենացի» (2002), ՀՀ ՄՆ (2007), ՄՆ (2011) ոսկե մեդալներ:

ՀԱՏՈՒԿ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ, ընդհ. դատարանների համակարգի մեջ չմտնող հատուկ դատ. մարմիններ մի շարք պետություններում, որոնք ստեղծված են առանձին խմբի գործերի քննության համար (օր.՝ արտոնագր., մաքս. ևն):

ՀԱՏՈՒԿ ԶՈՐՔԵՐ, մարտում (ռազմագործողությունում) հատուկ խնդիրներ կատարող և հատուկ սպառազինություն ու տեխ. հագեցվածություն ունեցող ՋՈՒ ստորաբաժանումներ ու զորամասեր (ճարտարագիտ., ռադիոտեխ., քիմ. ևն):

ՀԱՏՈՒԿ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, մասնագիտ. կրթության ձև: Պատրաստում է արտադրության ստորին օղակների անմիջական կազմակերպիչներ և ղեկներ, բարձրագույն որակավորում ունեցող մասնագետների օգնականներ են: Հ. մ. կ., որպես մասնագիտ. և ընդհ. կրթության աստիճան, ձևավորվել է XX դ–ի 1–ին կեսին, թեպետ առանձին հատուկ ուս. հաստատություններ երևան են եկել դեռևս XVIII դ–ի սկզբին:

ՀԱՏՈՒԿ ՎՃԱՆԳԱՎՈՐ ՎԱՐԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ Սենեքերիմ Մկրտչյանի անվան, ՀՀ ԱՆ կարանտին. հիվանդությունների մասնագիտացված գիտագործն. հիմնարկ Երևանում: Հիմնադրվել է 1941–ին (մինչև 1993–ն ունեցել է տարբեր անվանումներ): Հիմն. նպատակը՝ սան. կանխարգելիչ և հակահամաճարակ. համալիր միջոցառումներով ժանտախտի, տուլարեմիայի, խոլերայի ու հատուկ վտանգավոր վարակիչ այլ հիվանդությունների ներբերման, բռնկումների և տարածման կանխումն ու վերացումն են:

ՀԱՏՈՒԿ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻ, երկրի մնացած տարածքի համեմատությամբ հատուկ իրավ. կարգավիճակ ու ազգ. և/կամ օտարերկրյա ձեռնարկատերերի համար արտոնյալ տնտ. պայմաններ ունեցող տարածք: Այդպիսի գոտու ստեղծման գլխ. նպատակն ամբողջ պետության կամ առանձին տարածքների զարգացման ռազմավար. (արտաքին առևտր., ընդհ. տնտ., սոցիալ., տարածաշրջ. ու գիտատեխն.) խնդիրների լուծման խթանումն է:

ՀԱՏՈՒԿ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ (մաթ.), առանձին դասերի ֆունկցիաների խումբ, որոնք հանդիպում են մաթ–ի շատ բաժիններում տես. և կիրառ. (հատկապես՝ մաթ. ֆիզիկայի) խնդիրներ լուծելիս: Փոխոխ. (հիմնականում՝ Հ. ֆ.) գործակիցներով 2–րդ կարգի գծային ***դիֆերենցիալ հավասարումների*** լուծումներն են: Կարևորագույն Հ. ֆ. են **հիպերերկրաչափական, գլանային, ոլորտային, գնդային** և այլ ֆունկցիաներ:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ, օդում պարունակվող գոլորշու և նույն ջերմաստիճանում հագեցած գոլորշու առաձգականությունների հարաբերությունը՝ արտահայտված տոկոսներով:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ (ֆիզ.), ***նյութական կետի*** (կամ մարմնի) շարժումը հաշվարկման շարժ. համակարգի նկատմամբ, որը որոշակի կերպով տեղաշարժվում է պայմանականորեն անշարժ համարվող հաշվարկման հիմն. համակարգի նկատմամբ:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ուսմունք տարածության, ժամանակի և տիեզ. ձգողության մասին: Ստեղծել է Ա. ***Էյնշտեյնը*** 1916–ին: Հիմքում հարաբերականության ընդհ. սկզբունքն է (տես ***Հարաբերականության սկզբունք***), որի համաձայն՝ բնության օրինաչափությունները ձևակերպող հավասարումները հաշվարկման բոլոր համակարգերում պետք է ունենան միևնույն տեսքը կամ պետք է ինվարիանտ լինեն տարածաժամանակ. կոորդինատների կամայական ձևափոխությունների նկատմամբ:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ***հարաբերական մասնակի տեսություն***, ուսմունք տարածության ու ժամանակի մասին, որտեղ կարելի է արհամարհել ձգողականության դաշտը և ներմուծել ***հաշվարկման իներցիալ համակարգեր***: Վերջնականապես ձևակերպել է Ա. ***Էյնշտեյնը*** 1905–ին:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԿԱՔՈՒՆՔ, ֆիզիկայի հիմնարար օրենք, ըստ որի՝ ցանկացած շարժընթաց հանգստի վիճակում գտնվող և հավասարաչափ ուղղագիծ շարժվող մեկուսացած նյութ. կետում տեղի է ունենում նույնորեն: Շարժման կամ հանգստի վիճակը որոշվում է կամայականորեն ընտրված ***հաշվարկման իներցիալ համակարգի*** նկատմամբ: Հ. ս. դրված է Էյնշտեյնի ***հարաբերականության հատուկ տեսության*** հիմքում:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ Էյնշտեյնի, ֆիզ. տեսություն. դիտարկում է ֆիզ. շարժընթացների տարածաժամանակ. հատկությունները: Քանի որ Հ. տ–յան սահմանած օրինաչափությունները ընդհանուր են բոլոր ֆիզ. շարժընթացների համար, ապա այդ օրինաչափությունները պարզապես դիտարկվում են որպես տարածություն–ժամանակի (տ–ժ) հատկություններ: Վերջինները կախված են տվյալ տիրույթի ձգողության դաշտերից: S–ժ–ի հատկությունները մոտավոր նկարագրող տեսությունը, երբ ձգողության դաշտերը կարելի է արհամարհել, կոչվում է հատուկ, մասնավոր կամ պարզապես Հ. տ. (ստեղծել է Ա. Էյնշտեյնը 1905–ին): Հ. տ–յան հատկությունները ձգողության դաշտի առկայության պայմաններում կոչվում է ընդհ. Հ. տ. (մշակել է Էյնշտեյնը 1915–16–ին): Հ. տ–յամբ նկարագրվող ֆիզ. երևույթները կոչվում են ռելյատիվիստ. և ի հայտ են գալիս վակուումում լույսի c արագությանը մոտ մարմինների v արագությունների դեպքում:

Հ. տ–յան հիմքում դրված է 2 դրույթ. ***հարաբերականության սկզբունքը***, որը նշանակում է հաշվարկման իներցիական բոլոր համակարգերի հավասարարժեքություն, և վակուումում լույսի արագության հաստատունությունը՝ նրա անկախությունը լույսի աղբյուրի շարժման արագությունից: Այս 2 դրույթները ընդորոշում են մի հաշվարկման իներցիական համակարգից մյուսին անցնելու բանաձևերը՝ Լորենցի ձևափոխությունները: Վերջինների համար բնորոշ են ոչ միայն տարած. կոորդինատների, այլև ժամանակի մոմենտների փոփոխությունները (ժամանակի հարաբերականություն): Լորենցի ձևափոխություններով ստացվում են հատուկ Հ. տ–յան հիմն. էֆեկտները. յուրաքանչյուր փոխազդեցության հաղորդման սահման. արագության՝ այսինքն այն մեծագույն արագության գոյությունը, մինչև որը կարելի է արագացնել մարմինը, և որը համընկնում է վակուումում լույսի արագության հետ, միաժամանակականության հարաբերական լինելը (մի հաշվարկման իներցիական համակարգում միաժամանակյա պատահույթները, ընդհ. դեպքում կարող են միաժամանակյա չլինել մյուսում), արագ շարժվող մարմնում ժամանակի ընթացքի դանդաղելը (մի հաշվարկման իներցիական համակարգի նկատմամբ v արագությամբ շարժվող մարմնում ֆիզ. շարժընթացները տեղի են ունենում $1/\sqrt{1-v^2/c^2}$ անգամ ավելի դանդաղ, քան այդ համակարգում) և մարմնի երկայն. չափերի կրճատում (ընթացքի ուղղությամբ): Մարմնի m զանգվածն աճում է՝ նրա v արագության աճման հետ՝ $m = m_0/\sqrt{1-v^2/c^2}$ բանաձևով, որտեղ m_0–ն մարմնի հանգստի զանգվածն է: Շարժվող մարմնի լրիվ էներգիան որոշվում է Էյնշտեյնի առնչությամբ՝ $E = mc^2$, մարմինը հանգստի վիճակում օժտված է $E = m_0c^2$ էներգիայով: Հ. տ–յան այս բոլոր օրինաչափությունները հուսալիորեն հաստատվել են փորձերով: Հ. տ. բացահայտել է դաս. ֆիզիկայի «բացարձակ» տարածության և ժամանակի մասին պատկերացումների սահմանափակությունը, շարժվող մատերիայից դրանց առանձնացնելու ոչ օրինաչափ լինելը: Դաս. մեխանիկայի համեմատությամբ Հ. տ. ավելի ճշգրիտ է արտահայտում ռեալ իրականության օբյեկտիվ շարժընթացները:

ՀԱՐԱԼԴ I Հորֆագեր (Harald Haarfager, բառացի՝ գեղահեր, մոտ 850–մոտ 933), Նորվեգիայի թագավոր: Առաջին անգամ միավորել է երկիրը՝ ոչնչացնելով կամ հնազանդեցնելով առանձին շրջանների տիրակալներին:

ՀԱՐԱԼԴ III ԴԱԺԱՆ, Հարալդ Սիգուրդսոն (Harald III Hardrade, Harald Sigurdsson, 1015–1066), Նորվեգիայի թագավոր՝ 1046–ից: 1048–ին հիմնադրել է Օսլո ք–ը: Զոհվել է Ստամֆորդ–Բրիջի (Անգլիա) մոտ տեղի ունեցած ճակատամարտում, երբ փորձել է նվաճել Անգլիայի գահը:

ՀԱՐԱԼԴ V (ծ. 1937), Նորվեգիայի թագավոր՝ 1991–ից: Հաջորդել է հորը՝ Ուլֆա V–ին:

ՀԱՐԱԼԵԶՆԵՐ, **Արալեզներ, Առլեզք**, առասպել. շնակերպ հրեշներ, որոնք մահացած քաջերին լիզելով կենդանացրել են: Ըստ ավանդության՝ Աստեղաստանի ***Շամիրամ*** թագուհին Հ–ին է հանձնել մարտում զոհված ***Արա Գեղեցիկի*** դին՝ վերքերը լիզելով կենդանացնելու: Այստեղից էլ՝ «Հ.» («Արային լիզողներ») անվանումը:

ՀԱՐԱՆՑ ԱՆԱՊԱՏ, **Սյունյաց Մեծ անապատ**, ճարտ. համալիր ՀՀ Սյունիքի մարզի Հալիձոր գ–ի մերձակայքում՝ Որոտան գետի ափին: Հիմնադրվել է 1608–13–ին: Համալիրում են եռանավ բազիլիկ եկեղեցին՝ կից գավիթ–սրահով և 2 սենյակով, սեղանատունը, պարիսպների մնացորդները:

ՀԱՐԱՉԱՓ, պարամետր (հուն.՝ parametron – չափող, համաչափող), 1. (մաթ.) մեծություն, որի արժեքները հնարավորություն են տալիս բազմության տարրերից (կորեր) առանձնացնելու որոշակի տարր (կոր). օր.՝ $x^2 + y^2 = r^2$ հավասարման մեջ r մեծությունը շրջանագծի Հ. է: 2. (Տեխ.) շարժընթացի, երևույթի կամ համակարգի, մեքենայի, գործիքի որևէ հատկություն (օր.՝ էլ. դիմադրություն, ***ջերմունակություն, զանգված***

ևն) բնութագրող մեծություն: Լինում են կենտրոնացված (օր.՝ էլ. կոնդենսատորի ունակությունը, հեծանից կախված բեռի զանգվածը) և տարածության մեջ բաշխված (օր.՝ էլեկտրահաղորդման գծի ինդուկտիվությունը):

ՀԱՐԱՎ, հարավի կետ, հորիզոնի 4 գլխ. կետերից մեկը: Նշանակումը՝ S (անգլ.՝ south) տառով: Երկնոլորտի վրա Հ–ի կետը մաթ. հորիզոնի և երկնս. միջօրեականի հատման 2 կետերից աշխարհի Հվ. բևեռին ամենամոտ կետն է:

ՀԱՐԱՎԱԼԻՉՈՒԲՅԱՆ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Պամիրի հվ–ում՝ Տաջիկստանում: Երկ.՝ մոտ 150 *կմ*, բարձր.՝ 5706 *մ*: Կան սառցադաշտեր:

ՀԱՐԱՎԱՄԵՐԻԿՅԱՆ ՊԼԱՏՖՈՐՄ, Բրազիլիական պլատֆորմ, մինչքեմբրյան պլատֆորմ, որի հիմքի իջած տեղամասերը, լցվելով ծով. և գետ. նստվածքներով, վերածվել են կուտակում. դաշտավայրերի (օր.՝ Ամազոնի, Օրինոկոյի և Լա Պլատայի): Հիմքի բարձրացած տեղամասերում ձևավորվել են սարահարթեր (օր.՝ Բրազիլ. ու Գվիանեական): Արմ–ից եզրավորված է Անդերի երիտասարդ ծալքավոր լեռներով: Ամենաբարձր գագաթն Ակոնկագուա լ–ն է (6960 *մ*), ամենացածր կետը՝ Արգենտինան (–40 *մ*): Տեղի են ունենում ուժեղ երկրաշարժեր, կան գործող հրաբուխներ (Չիմբորասո, Քոթոպախի):

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱԼԹԱՅ, լ–շղթա Ալթայի հվ–ում, հիմնականում՝ Ղազախստանում: Երկ.՝ մոտ 125 *կմ*, բարձր.՝ 3483 *մ*: Կան սառցադաշտեր (ընդհ. տարածքը՝ 116 *կմ*^{2}):

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱԼՊԵՐ, Նորզելանդական Ալպեր, լ–շղթա Նոր Զելանդիա կղզու հվ–ում: Երկ.՝ 600 *կմ*, բարձր.՝ 3764 *մ* (Կուկի լ.): Կան սառցադաշտեր (ընդհ. տարածքը՝ 1000 *կմ*^{2}):

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ, մայրցամաք Արմ. կիսագնդում՝ Խաղաղ և Ատլանտ. օվկ–ների, հս. լայն–յան 12º28’ (Գալինաս հրվանդան) և հվ. լայն–յան 53º54’ (Ֆրոուարդ հրվանդան), արմ. երկայն–յան 34º47’ (Կաբու Բրանկու հրվանդան) և 81º20’ (Պարինյան հրվանդան) միջև: Պանամայի պարանոցով միանում է Հս. Ամերիկային, Դրեյկի նեղուցով բաժանվում Անտարկտիդայից: Տարածքը կղզիների (Հրո Երկիր կղզեխումբ, Չիլիական, Ֆոլկլենդյան, Գալապագոս ևն) հետ՝ 18,28 մլն *կմ*^{2}: Առլգն երկ.՝ 7150 *կմ*, լայն.՝ 5100 *մ*: Բն.՝ 387,5 մլն (2011): Ռելիեֆում առանձնանում են Հարավամերիկ. պլատֆորմը՝ արլ–ում, և Անդերի ծալքավոր լեռն. գոտին՝ արմ–ում և հս–արմ–ում: Պլատֆորմ. բարձրավանդակներն են. հս–ում՝ Գվիանական (3014 *մ*, Ներլինո լ.), արլ–ում՝ Բրազիլ. (2890 *մ*, Բանդեյրա լ.), հվ–ում՝ Պատագոնիայի (բարձր.՝ մինչև 2200 *մ*): Անդերի և սարահարթերի միջև եղած ճկվածքներում են Օրինոկոյի, Ամազոնի, Պանտանալի, Գրան Չակոյի և այլ դաշտավայրեր: Խաղաղօվկիանոս. ափի երկայնքով ձգվում է (9000 *կմ*) Անդերի լեռն. համակարգը: Ռելիեֆին բնորոշ են մեծ բարձր–ները, միջլեռն. սարավանդներն ու մնացորդ. լճերը և խորը կիրճերը: Կլիման մեծ մասամբ մերձհասարակածային է և արևադարձ., Ամազոնում՝ հասարակած. (մշտ. խոնավությամբ), հվ–ում՝ մերձարևադարձ. և բարեխառն: Հ. Ա–ի մակերևութ. հոսքը (կազմում է երկրագնդի ամբողջ հոսքի 27 %–ը) Ատլանտ. օվկ–ի ավազանինն է: Խոշոր գետերն են Ամազոնը, Պարանան, Օրինոկոն, Սան Ֆրանսիսկուն, Տոկանտինսը, Ուրուգվայը ևն, որոնք հիմնականում նավարկելի են: Անդերում կան սառցադաշտ. (Բուենոս Այրես ևն), տեկտ. (Տիտիկական) և մնացորդ. (Պոոպո) լճեր: Խոշոր ծովալճակներից են Մարակայբոն, Փաթոսը, Լագոա Միրինը ևն: Տարածված են խոնավ, հասարական., մշտականաչ, ասեղնատերև անտառները, սավաննաները, անապատները ևն: Բնորոշ կենդանիներից են զրահակիրը, մրջնակերը, ծովախոզուկը, շինշիլան, մազամ եղջերուն, ջրարջը, լաման, բաշավոր գայլը, հովազը, կապիկները, կոկորդիլոսները, օձերը ևն: Հ. Ա–ի տարածքում են Արգենտինա, Բոլիվիա, Բրազիլիա, Գայանա, Էկվադոր, Կոլումբիա, Պարագվայ, Պերու, Սուրինամ, Վենեսուելա, Ուրուգվայ, Չիլի պետությունները: Կախյալ տիրույթները՝ Ֆոլկլենդյան (Մալվինյան) կղզիներ (վիճարկելի տարածք Մեծ Բրիտանիայի և Արգենտինայի միջև), Ֆրանս. Գվիանա (Ֆրանսիա), Հվ. Ջորջիա և Հվ–սանդվիչյան կղզիներ (Մեծ Բրիտանիա, համարվում է Անտարկտիկայի մաս):

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՍԻԱ, բնամարզ Ասիայում: Տարածքը՝ 4,5 մլն *կմ*^{2}: Տարածված են արևադարձ. անտառները: Հարթավայրերում զբաղվում են արևադարձ. երկրագործությամբ: Ներառում է Բանգլադեշ, Բութան, Հնդկաստան, Նեպալ, Պակիստան, Շրի Լանկա, Մալդիվներ պետությունները, Հնդստան թ–կղզին և հարակից կղզիները, Ինդոս–գանգես. հարթավայրը և նրան երիզապատող լեռները: Երբեմն Հ. Ա–ում ներառում են նաև Հվ–արլ. Ասիայի երկրները:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՎՍՏՐԱԼԻԱ (South Australia), նահգ Ավստրալ. Միությունում: Տարածքը՝ 984,4 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,7 մլն (2016): Վարչ. կենտրոնը՝ Ադելաիդա:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՖՐԻԿԱ, բնամարզ Աֆրիկայում: Տարածվում է Կոնգո–Զամբեզի ջրբաժան սարավանդից: Ընդգրկում է նաև Մադագասկար և Մասկարենյան կղզիները: Տարածքի մեծ մասն զբաղեցնում են 1500–2000 *մ* բարձր–յան սարահարթերով եզրավորված Կալահարիի բարձրադիր հարթավայրերը (Դրակոնյան լ–ներում՝ մինչև 3482 *մ*), ծայր հվ–ում՝ Կապի լ–ները: Կլիման առավելապես արևադարձ. պասսատային է, մեծ մասամբ՝ չորային, ծայր հվ–ում՝ մերձարևադարձ.: Խոշոր գետերն են Լիմպոպոն, Զամբեզին, Օրանժը, Կունենեն ևն: Տարածված են նոսրանտառներ, սարավանդների և անապատների տարբեր տեսակներ, ծայր հվ–ում՝ մերձարևադարձ. դալար անտառներ: Կան առյուծների, ընձառյուծների, գոմեշների, ռնգեղջյուրների, ընձուղտերի պահպանված արգելոցներ: Ըստ ՄԱԿ–ի դասակարգման՝ Հ. Ա–ի մեջ մտնում են Բոտսվանա, Լեսոտո, ՀԱՀ, Նամիբիա, Սվազիլենդ, իսկ ըստ աշխարհագրության՝ Անգոլա, Զամբիա, Զիմբաբվե, Մավրիկիա, Մադագասկար, Մայոտտա, Մալավի, Մոզամբիկ, Ռեյունիոն պետությունները: Երբեմն Հ. Ա–ի մեջ են ներառում նաև Կոնգոյի ԺՀՀ–ն (սովորաբար ներառված է Կենտր. Աֆրիկայի կազմում) և Տանզանիան (Արլ. Աֆրիկա):

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԲԵՎԵՌ, Երկրի պտտման երևակայական առանցքի և Երկրի մակերևույթի հատման կետը Հվ. կիսագնդում՝ Անտարկտիդա մայրցամաքի կենտր. մասում՝ 2800 *մ* բարձր–յան վրա: Հ. բ–ի շրջանում սառցի շերտի հաստությունը հասնում է 2810 *մ*–ի: Հ. բ. առաջինը նվաճել է Ռ. *Ամունդսենի* գլխավորած նորվեգ. արշավախումբը (1911–ի դեկտ. 16): Հ. բ–ի վրայով առաջին թռիչքը կատարել է ամերիկացի օդաչու Ռ. Բերդը (1929):

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԲՎԵՃ, բվանմանների կարգի բվերի ընտանիքի գիշատիչ թռչուն: Նստակյաց է, քիչ տարածված: Հսկա դարչնագույն բու է, ականջներին՝ մեծ փետրափնջեր, աչքերը՝ նարնջագույն: Գիշեր. կյանք է վարում: Հաճախ հանդիպում է գետաձորերում, անտառների եզրամասերում: Բավական հեռու տարածությունից լսվում է կրկնվող ցածր խուլ կոինչը: Մնվում է թռչուններով, փոքր և միջին չափերի կաթնասուններով:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԲՈՒԳ, գետ Ուկրաինայում: Թափվում է Սև ծովի Բուգի ծովալճակը: Երկ.՝ 806 *կմ*, ավազանը՝ 63,7 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 90 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է 45 *կմ*: Գործում է ջրէկ:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԳԵՈՐԳԻԱ (South Georgia), **Հարավային Ջորջիա**, լեռն. կղզի Ատլանտ. օվկ–ի հվ–ում՝ Անտարկտիկայում: Տարածքը՝ 4,2 հզ. *կմ*^{2}, բարձր.՝ մինչև 2934 *մ*: Մեծ մասը ծածկված է ձյունով և սառույցով: Զբաղվում են կետորսությամբ: Գլխ. նվինգստո–ը՝ Գրյուտվիկեն: Հայտնագործել է Ջ. Կուկը 1775–ին և կոչել Անգլիայի *Գեորգ III* թագավորի պատվին:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԳՈԳՀՈՎԻՏ, Խաղաղ օվկ–ի հվ–արմ–ում: Խոր.՝ 6600 *մ*:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԴԱԿՈՏԱ (South Dakota), նահգ ԱՄՆ–ում: Տարածքը՝ 199,5 հզ. *կմ*^{2}, բն.՝ 845 հզ. (2014): Վարչ. կենտրոնը՝ Փիր:

«ՀԱՐԱՎԱՅԻՆ ԴԱՐՊԱՍ», տարածաշրջ., սոցիալ–մնտ., կրթամշակութ., վերլուծ. շաբաթաթերթ (2005–ից, հայ.՝ Ախալքալաքում, վրաց.՝ Ախալցխայում):

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՌԱՆԿՅՈՒՆ (լատ.՝ Triangulum Australe), համաստեղություն երկնքի Հվ. կիսագնդում՝ Ջոհասեղան, Դրախտային թռչուն, Կարկին, Անկյունակապ, Սիրամարգ համաստեղությունների միջև: Ամենապայծառ աստղը՝ 2–րդ ա. մ.: Հս. միջին լայն–յուններից չի երևում:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԹԱԳ (լատ.՝ Corona Australis), համաստեղություն երկնքի Հվ. կիսագնդում՝ Հեռադիտակ, Ջոհասեղան, Կարիճ, Աղեղնավոր համաստեղությունների միջև: Հս. միջին լայն–ներից երևում է ամռանը:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԽԱՉ (լատ.՝ Crux), համաստեղություն երկնքի Հվ. կիսագնդում, մակերեսով՝ ամենափոքրը: Նման է խաչի: Սահմանակից է Կենտավրոսի և Ճանճի համաստեղություններին: Գրեթե ճշտությամբ ցույց է տալիս աշխարհի Հվ. բևեռը:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿԱՐՈԼԻՆԱ, նահգ ԱՄՆ–ում: Տարածքը՝ 82,9 հզ. *կմ*^{2}, բն.՝ 4,7 մլն (2014): Վարչ. կենտրոնը՝ ***Կոլումբիա***:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿԵՏ, հարթ կետերի ընտանիքի ծով. կաթնասուն կենդանի: Երկ.՝ միջինը 14–16 (մինչև 20) *մ*, կ. զ.՝ 100 *տ*: Ապրում է տաք և բարեխառն ջրերում: Անհետացման եզրին է: 1935–ից ամենուր որսն արգելված է:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՂԶԻ (South Island), Նոր Զելանդիայի ամենամեծ կղզին: Տարածքը՝ 150,5 հզ. *կմ*^{2}, բն.՝ շուրջ 1 մլն (2016): Բարձր.՝ մինչև 3764 *մ* (Կուկի լ., երկրի ամենաբարձր կետը): Արլ–ում Քենթերբերյան հարթավայրն է՝ երկրի գլխ. երկրագործ. և անասնապահ. շրջանը: Գլխ. քաղաքը՝ ***Կրայստչերչ:***

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՀԻԴՐԱ (լատ.՝ Hydrys), համաստեղություն երկնքի Հվ. կիսագնդում՝ Օկտանան, Տուկան, Էրիդան, Ժամացույց, Մեղանասար, Ցանց, Ոսկե Ձկնիկ, Ճանճ համաստեղությունների միջև: Հս. միջին լայն-ներից չի երևում:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՁՈՒԿ (լատ.՝ Pisces Austrinus), համաստեղություն երկնքի Հվ. կիսագնդում՝ Կոռնակ, Մանրադիտակ, Այծեղջյուր, Ջրհոս, Քանդակագործ համաստեղությունների միջև: Ամենապայծառ աստղը՝ Ֆոմոլհաուտը (α Հվ. ձկան), առաջին ա. մ. է: Հս. միջին լայն-ներից երևում է ամռանն ու աշնանը:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՅՏԱՔԻԹ ՉՂՋԻԿ (Rhinolopus euriale), պայտաքիթ չղջիկների ընտանիքի կաթնասուն կենդանի: ՀՀ-ում հանդիպում է հվ.-արլ. մարզերում: Ապրում է քարանձավներում, ժայռախորշերում ու ճեղքերում: Մարմնի երկ.՝ 43–51, պոչինը՝ 18–28 *մմ*, կ. զ.՝ 6 *գ*: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄՈՒԽԱԿ (Luscinia megarhynchos), կեռնեխների ընտանիքի երգեցիկ թռչուն: Բնադրող է, չվող: Մարմնի երկ.՝ 14, թևերի բացվածքը՝ 20–22 *սմ*, կ. զ.՝ 15 *գ*: Թաքնվող թռչուն է և դժվար տեսանելի, ճանաչվում է բնորոշ ձայնով (գիշերը, լուսաբացին): Մնվում է անողնաշարներով, սերմերով: Կենսակերպն ուսումնասիրված է մասնակի:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՕՍԻԱ, մասնակիորեն ճանաչված (ճանաչել են միայն ՌԴ-ն, Վենեսուելան, Նիկարագուան և Նաուրուն) պետություն: Սահմանակից է Վրաստանին և ՌԴ-ին: Տարածքը՝ 3,9 հզ. *կմ*^{2}, բն.՝ 51 հզ. (2013): Մայրաքաղաքը՝ *Ցխինվալ*: Պաշտոն. լեզուն՝ օսերեն: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Բաժանված է 5 վարչ. շրջանների (ներառյալ մայրաքաղաք Ցխինվալը, որն ունի շրջանի կարգավիճակ): Հավատացյալներն ուղղափառ քրիստոնյա են: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 2,3 հզ. ԱՄՆ դոլար է (2012): Արտահանում է հիմնականում բանջարեղեն և մրգեր, ներմուծում (հիմնականում՝ ՌԴ-ից) մեքենաներ և սարքավորումներ, սպառող. ապրանքներ, սննդամթերք են: Դրամ. միավորը՝ ռուս. ռուբլի: Ժամանակակից Հ. Օ-ի տարածքում ապրել են ***ալանները***՝ ժամանակակից օսերի նախնիները:

1918–ից եղել է Վրաստանի Հանրապետության կազմում, 1922-ին՝ ԻՕ-ի կարգավիճակով: 1990-ին վերակազմավորվել է որպես ԻՀ: 1991-ին սկսվել են զինված բախումներ հարավօս. ինքնապաշտպ. ջոկատների և Վրաստանի ազգ. գվարդիայի միջև: 1992-ին հակամարտության գոտի են մտցվել խաղաղարար ուժեր: 1993-ին ընդունել են նոր սահմանադրություն: Միխեիլ ***Սահակաշվիլու***՝ Վրաստանի նախագահ ընտրվելուց հետո իրավիճակը սրվել է. 2008-ի օգոստ. 8-ին վրաց. կողմը զորքով մտել է Հ. Օ., փորձել է ուժով լուծել խնդիրը, որին, սակայն, դիմակայել են խաղաղարար ուժերը (հիմնականում՝ ռուս.) և վրաց. ջոկատներին դուրս մղել երկրից: Օգոստ. 26-ին ՌԴ-ն ճանաչել է Հ. Օ-ի անկախությունը և նրա հետ հաստատել դիվանագիտ. հարաբերություններ: Հ. Օ-ի տարածքում հայերն ապրել են Ախալգորիում և Ցխինվալում: 1844-ին Ցխինվալում ապրել է 100 հայ ընտանիք, 1872-ին՝ 167, իսկ 1979-ին՝ 953 մարդ: Ներկայում հայերի թիվը շուրջ 870 է: Ախալգորիում կանգուն են Սբ Աստվածածին (1462), Ցխինվալում՝ Սբ Աստվածածին (1718) և Սբ Համբարձման (XIX դ.) եկեղեցիները:

ՀԱՐԱՎԱՍԻԱԿԱՆ ՌԱՄԱ, ***մալայական ռասա***, զբաղեցնում է մոնղոլոիդ և հասարակած. ռասաների անցումային միջակայքը (գերակշռում են մոնղոլոիդ դիմագծերը): Ապրում են Հվ.-արլ. Ասիայում: Կարճահասակ են, մաշկը մուգ է, շուրթերը և քիթը՝ լայն:

ՀԱՐԱՎԱՍՏՐԱԼԻԱԿԱՆ ԳՈԳՀՈՎԻՏ, Հնդ. օվկ-ի հվ.-արլ.-ում՝ Ավստրալիայից հվ: Խոր.՝ մոտ 5000 *մ*, առյգն՝ 7102 *մ*:

ՀԱՐԱՎԱՏԼԱՆՏՅԱՆ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Միջինատլանտ. լ-շղթայի ստորջրյա մասն Ատլանտ. օվկ-ում: Տարածվում է Չեյն բեկվածքից (հասարակածին մոտ) մինչև հվ. լայն-յան 55°-ը՝ 6,5 հզ. *կմ* երկ-յամբ, լ-շղթայի տակ խոր.՝ 84–3400 *մ*: Առանձին բարձր-ներ դուրս են գալիս մակերևույթ՝ առաջացնելով Համբարձման, Տրիստան դա Կունիա և այլ կղզիներ:

ՀԱՐԱՎԱՏԼԱՆՏՅԱՆ ՀԱԿԱՅԻԿԼՈՆ, բարձր մթն. ճնշման կայուն շրջան Հվ. կիսագնդի մերձարևադարձ. և արևադարձ. լայն-ներում՝ Ատլանտ. օվկ-ի վրա, կենտրոնը՝ Հս. Հեղինեի կղզու մոտ:

ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍԻԱ, բնամարզ Ասիայում: Ընդգրկում է Հնդկաչինը, Մալայան կղզեխումբը և նրանց հարող տարածքները: Տարածքը՝ 4,5 մլն *կմ*^{2}, բն.՝ 599 մլն (2014): Ռելիեֆը՝ միջինլեռն. և հարթավայրային: Կան արևադարձ. անտառներ և սավաննաներ: Ներառում է Մյանմա (Բիրմա), Թաիլանդ, Լաոս, Կամբոջա, Վիետնամ, Ֆիլիպիններ, Մալայզիա, Սինգապուր, Բրունեյ, Ինդոնեզիա, Արլ. Թիմոր պետությունները: Երբեմն Հ. Ա-ի երկրները ներառվում են Հվ. Ասիայի կազմում:

ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍԻԱՅԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱՍԵԱՆ, անգլ.՝ Association of South East Asian Nations – ASEAN), տարածաշրջ. ինտեգրացիոն կազմ-յուն: Հիմնադրվել է 1967-ին: Անդամակցում են Ինդոնեզիան, Մալայզիան, Սինգապուրը, Թաիլանդը, Ֆիլիպինները և Բրունեյը (1984): Նպատակը տնտ., սոցիալ., մշակութ. և քաղ. համագործակցությունն է: 1980-ական թթ-ի կեսերից քայլեր են ձեռնարկվում տարածաշրջանում խաղաղության, չեզոքության և միջուկազերծ գոտի ստեղծելու ուղղությամբ:

ՀԱՐԱՎԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՍԻԱ, **Առաջավոր Ասիա**, բնամարզ Ասիայում՝ Արաբ. թ-կղզու և նրան հարող տարածքներում: Եգիպտոսի հետ կոչվում է նաև Մերձ. Արևելք՝ Միջերկր., Արաբ., Կարմիր, Սև և Կասպից ծովերի, Ադենի, Օմանի և Պարսից ծոցերի միջև: Տարածքը՝ մոտ 3 մլն *կմ*^{2}, բն.՝ 340 մլն (2014): Տարածված են ավազ. անապատները, կիսաանապատները և օազիսները, իսկ դրանց հարևանությամբ՝ ձյունապատ լ-գագաթները, կանաչապատ գետահովիտներն ու ծովափերը: Գլխ. հարստությունը՝նավթն է, կենտրոնացված է նաև բնական գազի համաշխ. պաշարների 3/5-ը: Ներառում է Ադրբեջան, ԱՄԷ, Բահրեյն, Եմեն, Թուրքիա, Իսրայել, Իրաք, Իրան, Լիբանան, Քաթար, Կիպրոս, Հայաստան, Հորդանան, Սաուդյան Արաբիա, Սիրիա, Վրաստան, Օման պետությունները:

ՀԱՐԱՎԱՖՐԻԿՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՀԱՀ), պետություն Հվ. Աֆրիկայում: Սահմանակից է Նամիբիային, Բոտսվանային, Մոզամբիկին, Սվազիլենդին և Լեսոթոյին: Տարածքը՝ 1,2 մլն *կմ*^{2}, բն.՝ 54 մլն (2013): Մայրաքաղաքները՝ Պրետորիա (գործադիր իշխանություն), Քեյփթաուն (օրենսդիր իշխանություն), Բլումֆոնթեյն (դատ. իշխանություն): Պաշտոն. լեզուները՝ անգլ., աֆրիկաս., զուլու, կոսա ևն: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը: Բաժանված է 9 վարչ. պրովինցիաների: Հավատացյալների մեծ մասը քրիստոնեության տարբեր ուղղությունների և աղանդների (սիոն. եկեղեցի, հիսնականներ, կաթոլիկներ, մեթոդիականներ ևն) հետևորդ է: Անդամակցում է ՄԱԿ-ին, Մեծ քսանյակին, Աֆրիկ. միությանը, ԱոտՀԿ-ին ևն: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 13,2 հզ. ԱՄՆ դոլար է (2014): Արտահանում է ոսկի, ադամանդ, պլատին, մեքենաներ և սարքավորումներ ևն, ներմուծում մեքենաներ ու սարքավորումներ, նավթ, քիմիկատներ, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ հարավաֆրիկ. ռենդ:

Երկրի հին բնակիչները եղել են բուշմենները, հոտենտոտները և բանտուները: XVII դ–ի 50-ական թթ–ին հոլ. Արևելահնդ. ընկ-ը հիմնել է Կապ գաղութը: Հոլ. գաղութաբնակները՝ բուրերը, աստիճանաբար ընդլայնել են գաղութի սահմանները՝ ոչնչացնելով կամ անապատ. շրջաններ մղելով բնիկներին: XVIII–XIX դդ–ի սահմանագծին Կապը գավթել են անգլիացիները: XIX դ–ի 1-ին կեսին բուրերը հիմնել են մի շարք հանրապետություններ, որոնք, բացի Մեծ Բրիտանիայի գավթած Նատալից, միավորվել են ՀԱՀ-ի և Օրանժի Հանրապետության մեջ: Անգլո-բուր. պատերազմի հետևանքով Մեծ Բրիտանիան նվաճել է Տրանսվաալը և Օրանժը: 1910-ին կազմվել է Անգլիայի դոմինիոն Հարավաֆրիկ. Միությունը (ՀԱՄ): Երկրում ոչ եվրոպ. բնակչության նկատմամբ հաստատվել է ռասայական խտրականության և առանձնացման (սեգրեգացիա) ռեժիմ: 1961-ին կառ-յունը հայտարարել է ՀԱՄ-ի՝ Համագործակցության կազմից դուրս գալու մասին և երկիրը վերանվանել է ՀԱՀ: 1980-ական թթ-ին ուժեղացել է պայքարն ***ապարտհեյդի*** դեմ: 1991-ին խորհրդարանը վերացրել է ռասայական խտրականությունն ու առանձնացումը՝ ըստ բնակավայրի և հողատիրության, 1993-ից քայլեր են իրականացվել կրթության ոլորտում առանձնացումը վերացնելու ուղղությամբ: 1994-ին ՀԱՀ-ի նախագահ է ընտրվել Ն. ***Մանդելան***, 2009-ից՝ Ջ. Զուման:

ՀԱՐԱՎԿԱՍԿԱՊԻԱԿԱՆ ՅԱԾՐԱՎԱՅՐ, Իրանի հս-ում՝ Կասպից ծովի հվ. ափերին: Պարփակվում է Էլբուրս լ-ներով: Երկ.՝ 500 *կմ*, լայն.՝ 2–6-ից մինչև 40 *կմ*: Զարգացած է մերձարևադարձ. երկրագործությունը:

ՀԱՐԱՎՀՆԴԿԱԿԱՆ ՀԱԿԱՅԻԿԼՈՆ, բարձր մթն. ճնշման շրջան Հվ. կիսագնդի մերձարևադարձ. և արևադարձ. լայն-ներում՝ Խաղաղ օվկ-ում, կենտրոնը՝ Մավրիկիա կղզու մոտ:

ՀԱՐԱՎՂԱՋԱԽԱԿԱՆ ՄԱՐԶ, վտմ Ղազախստանում: Տարածքը՝ 116,3 հզ. *կմ*^{2}, բն.՝ 2,8 մլն (2013): Վարչ. կենտրոնը՝ Չիմքենդ:

ՀԱՐԱՎՇԵՏԼԱՆԴԱԿԱՆ ԿՂԶԻՆԵՐ (South Shetland Islands), հրաբխ. լեռն. կղզեխումբ Ատլանտ. օվկ-ի հվ.-ում՝ Դրեյկի նեղուցում: Բաղկացած են 11 մեծ և բազմաթիվ մանր կղզիներից: Տարածքը՝ մոտ 4300 *կմ*^{2}, բարձր.՝ մինչև 2300 *մ*: Ծածկված

են ձյունով և սառույցով: Կղզիներում մշտ. գործում են մի քանի գիտ. կայաններ: Փոկերի և ծովառյուծների մակաղատեղի է, զբաղվում են կետորսությամբ:

ՀԱՐԱՎԶԻՆԱԿԱՆ ԼԵՌՆԵՐ, Չինաստանի հվ–արլ–ում՝ Յանցզիի հովտից հվ: Երկ.՝ շուրջ 2000 *կմ*, բարձր.՝ մինչև 2158 *մ*: Տարածված են մերձարևադարձ. մուսսոն. անտառները:

ՀԱՐԱՎԶԻՆԱԿԱՆ ԾՈՎ, կիսափակ ծով Խաղաղ օվկ–ի արմ–ում՝ Ասիայի արլ. ափին և Լուսոն, Պալավան, Կալիմանտան կղզիների միջև: Մակերեսը՝ 3537 հզ. *կմ*², միջին խոր.՝ 1024 *մ*: Ծով է թափվում Մեկոնգ գետը: Ջարգացած է ձկնորսությունը:

ՀԱՐԱՎՉՈՒՅԱՆ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Ալթայում և Ալթայի Հանրապետությունում: Երկ.՝ 120 *կմ*, բարձր.՝ 3960 *մ*: Կան սառցադաշտեր:

ՀԱՐԱՎ ՍԱՆԴՎԻՉՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ (South Sandvich Islands), հրաբխ., անմարդաբնակ կղզեխումբ Ատլանտ. օվկ–ի հվ–ում՝ Անտարկտիդայում: Բաղկացած են 8 մեծ և բազմաթիվ մանր կղզիներից: Տարածքը՝ մոտ 300 *կմ*², բարձր.՝ մինչև 1372 *մ*: Կան գործող հրաբուխներ: Աճում են քարաքոսեր և մամուռներ: Հարուստ է թռչուններով: Փոկերի մակաղատեղի է: Հայտնագործել է Ջ. *Կուկը* 1775–ին:

ՀԱՐԱՎՍԻԲԻՐԱԿԱՆ ՌԱՍԱ, **թուրանյան ռասա**, անցումային է եվրոպեոիդ և մոնղոլոիդ ռասաների միջև (մոնղոլոիդ գծերը գերակշռում են): Տարածված է Ղազախստանում, Միջին Ասիայում, Ալթայում և Մոնղոլիայում:

ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱ (Jugoslavia), պետություն Եվրոպայի հվ–ում, հիմնականում՝ Բալկանյան թ–կղզում: Կազմավորվել է 1918–ին՝ Ավստրո–Հունգարիայի փլուզումից հետո՝ որպես Սերբերի, խորվաթների և սլովենների թագավորություն, ներառել Սերբիան, Խորվաթիան, Սլովենիան, Բոսնիան և Հերցոգովինան, Չեռնոգորիան, Մակեդոնիան: 1929–ից կոչվել է Հ–ի թագավորություն, 1945–ից՝ Հ–ի Ժող. Հանրապետություն, 1963–ից՝ Հ–ի Սոց. Ֆեդերատիվ Հանրապետություն (ՀՍՖՀ): 1992–ին Սերբիան և Չեռնոգորիան կազմավորել են Միութ. Հանրապետություն, 2003–ին՝ Սերբիայի և Չեռնոգորիայի Համադաշն. Պետ. Միություն: Հ. վերջնականապես դադարել է գոյություն ունենալուց 2006–ին՝ Միությունից Չեռնոգորիայի դուրս գալով: 1991–2006–ին տրոհվել է անկախ պետությունների՝ Բոսնիա և Հերցեգովինա, Խորվաթիա, Մակեդոնիա, Չեռնոգորիա, Սերբիա, Սլովենիա, Կոսովո (մասնակի ճանաչված):

ՀԱՐԱՎՕՐԿՆԵՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ (South Orkney Islands), կղզեխումբ Ատլանտ. օվկ–ի հվ–արմ–ում՝ Անտարկտիկայում: Բաղկացած է 4 մեծ և 40 մանր կղզիներից: Տարածքը՝ 621 *կմ*², բարձր.՝ մինչև 1266 *մ*: Մշտ. բնակչություն չկա: Մեծ մասը ծածկված է ձյունով և սառույցով: Փոկերի և ծովառյուծների մակաղատեղի է, հարուստ է ծով. թռչուններով: Հայտնագործվել է 1821–ին:

ՀԱՐԱՐԳԱՆԴԱԲՈՐԲ, **պարամետրիտ** (< *պարա...* և հուն.՝ metra – արգանդ), հարարգանդ. բջջանքի բորբոք. հիվանդություն: Բնորոշվում է մարմնի ջերմաստիճանի բարձրացմամբ, որովայնի ցավերով: Նկատվում է ծննդաբերությունից կամ վիժումից հետո:

ՀԱՐԱՐԵ (Harare, մինչև 1962–ը՝ Սոլսբերի), Զիմբաբվեի մայրաքաղաքը (ունի պրովինցիայի կարգավիճակ): Բն.՝ 1,7 մլն (2010): Գործում է միջազգ. օդանավակայան: Կան մետաղամշակման, քիմ., թեթև, սննդի արդ–յան և այլ ձեռն–ներ: Հիմնադրվել է 1890–ին: Մոտակայքում արդյունահանվում է ոսկի:

ՀԱՐԱՅՈՒՅՑ, **պարադիգմա** (հուն.՝ paradeigma – օրինակ, նմուշ), 1. (փիլ.) գիտ. հանրության մեջ որոշակի պատմ. շրջանում ընդունված գիտ. նվաճումների ամբողջություն, որը դառնում է նոր գիտ. ուսումնասիրությունների հիմք և նմուշ: Հ–ների հերթափոխությանը հաջորդում է գիտ. հեղ–յուն: 2. (Լեզվաբ.) որևէ բառի ձևերի համակարգ, որն արտահայտում է նրա քերական. կատեգորիաներին բնորոշ ձևափոխությունները: Հոլովման կամ խոնարհման նմուշ է:

ՀԱՐԲԻՆ, ք. Չինաստանի հս–արլ–ում՝ Սունգարի գետի ափին, Հեյլունցզյան նինգ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 10,7 մլն (2010): Երկթղ., գետ. և օդ. հաղորդակցության խոշոր հանգույց է: Հիմնադրել են ռուսները 1898–ին՝ Արևելաչին. երկթղ–ու կառուցման ժամանակ:

ՀԱՐԳ ազնիվ մետաղների, ոսկու, արծաթի, պլատինի կամ պալադիումի քանակ. պարունակությունը *լիգատուրային համաձուլվածքներում*, որոնցից պատրաստում են ոսկերչ. իրեր, ատամի պրոթեզներ, դրամներ, մետաղներ ևն: Ըստ Հ–ի նշանակման մետր. համակարգի՝ Հ. հավասար է լիգատուրային համաձուլվածքի 1000 մասում (ըստ զանգվածի) եղած ազնիվ մետաղների մասերի թվին:

ՀԱՐԳԵՅՍԱ (Hargeisa), ք. Սոմալիում, Հարմ. մարզի վարչ. կենտրոնը, ինքնահռչակ Սոմալիլենդի մայրաքաղաքը: Բն.՝ 760 հզ. (2015):

ՀԱՐԳՈՐՈՇՈՒՄ, 1. հանքաքարում, համաձուլվածքներում և պատրաստի շինվածքներում թանկարժեք մետաղների քանակության որոշումը:

2. **Մետաղհարգորոշում**, ոսկերչ. իրերում, գալվան. ծածկույթներում, համաձուլվածքներում, հանքանյութերում, թափոններում և այլ նյութերում մետաղների (առավելապես՝ ազնիվ) պարունակության քանակ. որոշման մեթոդները: Իրականացվում է հրամետաղաձուլ. և քիմ. եղանակներով:

ՀԱՐԳՐԻՎՍ (Hargreaves) Ջեյմս (ծ. թ. անհտ–1778), անգլիացի ջուլիակ: Ստեղծել է (1765) ժամանակին լայնորեն տարածված պարբեր. գործողության «Ջեննի» մանածագործ. մեքենան:

ՀԱՐԳԱԲԱՆՔԻ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԳՆԴԱԿՈՒՆ, ծով. անողնաշարների տիպի կայծքարաեղջերայինների կարգի խոշոր (սովորաբար՝ մինչև 20–30 *սմ*) սպունգներ: Արդյունագործ. սպունգ է՝ Միջերկր., Կարմիր, Կարիբյան ծովերում: Օգտագործում են հիգիենային, բժշկ. և տեխ. նպատակներով:

ՀԱՐԴԵՆ (Harden) Արթուր (1865–1940), անգլիացի քիմիկոս: Աշխ–ները վերաբերում են սպիրտ. խմորմանն ու նրան մասնակցող ֆերմենտներին: Հայտնաբերել է ոչ սպիտակուց. բնույթի օրգ. միացություններ, որոնք մտնում են որոշ ֆերմենտների՝ համաֆերմենտների կազմության մեջ: Հետազոտել է նրանցից մեկի՝ նիկոտինամիդադենինդինուկլեոտիդի կառուցվածքն ու ֆունկցիան: Նոբելյան մրց. (1929, Հ. ֆոն *Էյլեր–Խելպինի* հետ):

ՀԱՐԴԵՆԲԵՐԳ (Hardenberg) Կառլ (1750–1822), իշխան, Պրուսիայի պետ. կանցլեր՝ 1810–22–ին: 1804–06 և 1807–ին՝ ԱԳ նախարար: Շարունակել է Հ. Շտեյնի բարեփոխումները (տես նաև *Շտեյն–Հարդենբերգի բարեփոխումներ*):

ՀԱՐԴԻ (Hardy) Գոդֆրի Հարոլդ (1877–1947), անգլիացի մաթեմատիկոս, Լոնդոնի Թագավոր. ընկ–յան անդամ (1910), Քեմբրիջի (1906–19) և Օքսֆորդի (1919–31) համալսարանների պրոֆ.: ԽՍՀՄ ԳԱ արտ. պատվ. անդամ (1934): Աշխ–ները վերաբերում են թվերի և ֆունկցիաների տեսություններին:

ՀԱՐԴԻ Թոմաս (1840–1928), անգլիացի գրող: Հեղինակ է 14 վեպի (1871–97), որոնք, ըստ գաղափարագեղ. բովանդակության, բաժանել է 3 խմբի՝ «Բնավորության ու միջավայրի» («Քեսթերբրիջի քաղաքապետը», 1886, հայ.՝ 1978, «Տեսսը դ'Էրբերվիլների տոհմից: Անմեղ մի կնոջ ճշմարիտ պատմություն», 1891, հայ.՝ 1983, «Աննկատելի Ջուդը», 1896, ևն), «Հսարամիտ և փորձառական» («Անտարբերը», 1881, ևն), «Ռոմանտիկ պատմություններ ու ֆանտազիաներ» («Երկնագույն աչքեր», 1873, ևն), «Կառավարիչներ» (մաս 1–3, 1903–08) էպիկ. չափածո դրամայի, նաև բանաստեղծությունների, պատմվածքների:

ՀԱՐԴԻՆԳ (Harding) Ուորեն (1865–1923), ԱՄՆ–ի 29–րդ նախագահը՝ 1921–23–ին՝ Հանրապետ. կուս–յունից:

ՀԱՐԵԹ (Haret) Սպիրու Կոստաքեի (1851–1912), ռումինահայ մաթեմատիկոս–աստղագետ, պետ., հաս. գործիչ: Ռումինիայի ակադ–ի անդամ (1882): 1897–99, 1901–04 և 1907–10–ին՝ Ռումինիայի դավանությունների և հանրային կրթության նախարար: Ապացուցել է, որ գոյություն ունի մոլորակ. ուղեծրերի մեծ առանցքների դարավոր փոփոխություն, այսինքն՝ մոլորակ. համակարգը ևս անկայուն է: Նրա գրած «Եռանկյունաչափություն» դասագրքով մոտ 75 տարի դասավանդել են Ռումինիայի դպրոցներում: Լուսնի խառնարաններից մեկը կոչվել է Հ–ի անունով:

ՀԱՐԵՄ (արաբ.՝ խարամ – արգելված), **կանանոց, տիկնունի**, մահմեդականների տներում կանանց արգելափակված հարկաբաժին, նաև տանտիրոջ բոլոր կանանց և հարճերի ամբողջությունը:

ՀԱՐԵՆՑ Արմո Բագրատի (Հարությունյան Արամայիս, 1910–1995), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1947), պրոֆ. (1949): 1947–50–ին՝ Լենինականի, 1952–53–ին՝ Երևանի ՀԿ(բ)Կ քաղկոմների 1–ին քարտուղար: 1959–63–ին՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ–ի տնօրեն, 1963–67–ին՝ Հեռակա մանկավարժ. ինստ–ի ռեկտոր: Աշխ–ները վերաբերում են Այսրկովկասի հեղ. շարժման, Հայաստանի սոց. շին–յան պատմությանը:

ՀԱՐԵՆՑ Գաբրիել (1908–1994), նկարիչ: 1930–ական թթ–ից մասնակցել է Փարիզի «Անկախների» և «Աշնանային սալոն»ների ցուցահանդեսներին: Հեղինակ է քնար. բնապատկերների, ծով. և քաղաք. տեսարանների («Սբ Մարտենի ջրանցքը. Փարիզ», 1952, «Ռե կղզին», 1970, երկուսն էլ՝ ՀԱՊ):

ՀԱՐԵՐԻԿԱՄԱԲՈՐԲ, **պարանեֆրիտ** (< *պարա...* և հուն.՝ nephros – երիկամ), հարերիկամ. բջջանքի բորբոք. հիվանդություն: Առաջանում է վնասվածքից հետո կամ օրգանիզմում առկա վարակի օջախից արյան ու ավշի հոսքով մանրէների թափանցումից:

ՀԱՐԹ (Hart), եղբայրներ, **Հայնրիխ Հ.** (1855–1906) և **Յուլիուս Հ.** (1859–1930), գերմանացի գրողներ, քննադատներ:

Գերմ. նատուրալիզմի հիմնադիր–տեսաբաններից: Միասին հրատարակել են գրաքննադատ. հանդեսներ, ալմանախներ, հոդվածների ժող–ներ («Քննադատական արշավներ», մաս 1–6, 1882–84, «Նոր միություն», 1901): Հայնրիխ Հ. հեղինակ է նաև «Մարդկության երգ»–ի (հ. 1–4, 1887–1906), Յուլիուս Հ.՝ բանաստեղծությունների ժող–ների, նովելների, պիեսների, Բուդդայի, Զրադաշտի, Քրիստոսի մասին աշխ–ների:

ՀԱՐԹ Օլիվեր (ծ. 1948), ամերիկացի տնտեսագետ: ԱՄՆ ԳԱԱ անդամ (2016): Աշխ–ները վերաբերում են պայմանագրերի, ֆիրմայի տեսության, կորպորատիվ ֆինանսների և իրավունքի տնտեսագիտ. վերլուծության խնդիրներին:

Նոբելյան մրց. (2016, Բ. *Հոլմսթրյումի* հետ):


ՀԱՐԹ Ֆրենսիս Բրեթ (1836–1902), ամերիկացի գրող: Եղել է ռեալիզմի կողմնակից («Շատ հակիրճ շարադրված վեպեր», 1867, պարոդիաներ): Հեղինակ է «Կալիֆոռնիական պատմվածքներ» (1857–71, հայ.՝ 1945) ժող–ի, որտեղ նկարագրել է ոսկի որոնողների կենցաղն ու բարքերը, «Մռնչացող ճամբարի ճակատագիրը» (1868), «Մլիս» (1860, հայ.՝ 1910) գրքերի, «Գաբրիել Կոնրոյ» (1875–1876) վեպի, «Թենեֆթուլ Բլոսսըմ» (1877) վիպակի և այլ գործերի: Հայ. հրատարակվել են նաև «Ինսնուն և ութը տարի առաջ» (1902), «Տափաստանի ընկեցիկը» (1959) գործերը:

ՀԱՐԹ ԿԵՏԵՐ, անատամ կետերի ենթակարգի ծով. կաթնասունների ընտանիք: Փորն առանց ծալքերի է (այստեղից՝ անվանումը): Երկ.՝ 5–21 *մ*: Հայտնի է 3 տեսակ՝ գրենլանդ., հվ. և թզուկ: Փոքրաթիվ են: Որսն արգելված է (1935–ից): Առաջին 2 տեսակը գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՀԱՐԹ ԿՈՐ, կոր, որի բոլոր կետերը նույն հարթության մեջ են: Գոյություն ունեն Հ. կ–ի տրման հետևյալ անալիտիկ եղանակները. *դեկարտյան կոորդինատներում*՝ $F(x,y) = 0$ (ոչ բացահայտ տեսքով), $y = f(x)$ (բացահայտ տեսքով), $x = \varphi(t)$, $y = \varphi(t)$ (հաբրաչափ. տեսքով):


ՀԱՐԹ ՄԿԱՆՆԵՐ, կծկողունակ (մկան.) հյուսվածք. կազմված է հովհարաձև միակորիզ բջիջներից: Ի տարբերություն միջաձիգ զոլավոր մկանների՝ չունի միջաձիգ գծավորություն: Կազմում են անոթ–նաշարների մարմնի ամբողջ մկանունքը:

ՀԱՐԹ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, տպագրության եղանակ, երբ տպաձևի տպագրող և բացատային (չտպագրող) տարրերը միևնույն հարթության վրա են, բայց ունեն տարբեր ֆիզ. հատկություններ (տպագրող տարրերը՝ յուղաներկով պատվելու և ջուրը վանելու, բացատատարրերը՝ յուղաներկը վանելու): Հ. տ. են *վիմագրությունը*, *օֆսեթ տպագրությունը*, լուսատպագրությունը:



Հարթ տպագրություն. 1. տպաձև, 2. տպաձևը՝ ներկով, 3. թղթի հպվածքը տպաձևին, 4. տպաձևը և սրացված տպաժոն

ՀԱՐԹԱԳԻԾ (մաթ.), 1. կանոնավոր բազմանկյան կենտրոնից նրա ցանկացած կողմին իջեցրած ուղղահայաց հատվածը: 2. Կանոնավոր բուրգի (հատած բուրգի) Հ. կողմնային նիստի բարձրությունն է:



ՀԱՐԹԱՀԱՖՈՒԹՅՈՒՆ, *երկրաչափության* բաժին. ուսումնասիրում է 1 հարթության պատկանող պատկերների (հարթ պատկերներ) հատկությունները: Առաջին անգամ առավել լրիվ ու համակարգված շարադրել է հույն գիտնական Էվկլիդեսը «Սկզբունքներ» աշխ–յան մեջ:

ՀԱՐԹԱՎԱՅՐԵՐ, աննշան թեքությամբ և բարձր–յունների փոքր տատանումներով (մինչև 200 *մ*) ցամաքի մակերևույթի, ծովերի և օվկ–ների հատակի ռելիեֆի տարր: Հ. լինում են ծ. մ–ից ցածր (օր.՝ Մերձկասպյան), ցածրադիր (մինչև 200 *մ*, Կուր–Արաքսյան դաշտավայր), բարձրադիր (200–500 *մ*, Ուստյուրտ), լեռն. (500 *մ*–ից բարձր, Արարատյան, Շիրակի և Լոռու դաշտեր): Երկրի խոշորագույն Հ. են Մեծ և Կենտր. հարթավայրերը (Հս. Ամերիկայում), Ամազոնի և Գվիանեական դաշտավայրերը (Հվ. Ամերիկայում), Արևելաեվրոպ. (Եվրոպայում), Արևմտասիբիր., Ինդոս–Գանգեսյանը (Ասիայում) ևն:

ՀԱՐԹԱՔԱՆԴԱԿ, *բարելիեֆ* (ֆրանս.՝ bas–relief, bas – ցածր և relief – ուռուցիկություն), քանդ–յան տեսակ, ցածր քանդակ, ռելիեֆ, որի ուռուցիկ պատկերն իր ծավալի կեսից ավելի դուրս չի ցցված ֆոնի հարթությունից:

ՀԱՐԹԼԱՅՆ (Hartline) Հոլդեն Կեֆեր (1903–1983), ամերիկացի նյարդաֆիզիոլոգ: Ուսումնասիրել է տեսողության նյարդաֆիզիոլոգ. կենսընթացները, ցանցաթաղանթի առանձին նյարդ. բջիջների կենսաէլ. պոտենցիալները: Նոբելյան մրց. (1967, Ռ. *Գրանիտի* և Ջ. *Ուոլդի* հետ):

ՀԱՐԹԼԻ (Hartley) Դեվիդ (1705–1757), անգլիացի փիլ. և բժիշկ: *Ասոցիատիվ հոգեբանության* հիմնադիրներից: Զուգորդությունները համարել է հոգեկան գործընթացների բացատրման համապիտանի սկզբունք:

ՀԱՐԹՄԱՆ (Hartmann) Էդուարդ ֆոն (1842–1906), գերմանացի փիլ., համապսիխիզմի հետևորդ: Ամեն ինչի նախահիմք է համարել բացարձակ անգիտակցականի հոգևոր սկիզբը՝ համաշխ. կամքը («Անգիտակցականի փիլիսոփայություն»): Բարոյագիտ–յան մեջ, Ա. Շոպենհաուերի հետևությամբ, զարգացրել է հոռետեսության հայեցակարգը:

ՀԱՐԹՄԱՆ Կառլ Ամադեուս (1905–1963), գերմանացի կոմպոզիտոր: Հեղինակ է օպերաների («Սիմպլիցիա Սիպլիցիսիմուսի պատանեկությունը», 1935, ևն), բալետների, սիմֆոնիաների (1937–62), գործիք. կոնցերտների, կամեր–գործիք. և այլ երկերի:

ՀԱՐԹՄԱՆ Մորից (1821–1872), ավստրիացի գրող: Հեղինակ է «Պատերազմ անտառում» (1850), «Բարոնուհու թանկարժեք զարդերը» (1868) վեպերի, «Գավաթ և սուր» (1845) բանաստեղծությունների, «Ստվերներ» (1851), «Բնօրինակից» (1866) պատմվածքների ժող–ների և այլ գործերի:

ՀԱՐԹՄԱՆ Նիկոլայ (1882–1950), գերմանացի փիլ., քննադատ. գոյաբանության հիմնադիրը: Զարգացրել է կեցության շերտավոր կառուցվածքի մասին օբյեկտիվ–իդեալիստ. ուսմունք: Մշակել է անփոփոխ բարոյական արժեքների մասին տեսություն:

ՀԱՐԹՄԱՆ Յոհան Պետեր Էմիլիուս (1805–1900), դանիացի կոմպոզիտոր: Ազգ. ռոմանտիկ. օպերայի («Փոքրիկ Քիրստենը», 1846) և Դանիայի 1–ին կոնսերվատորիայի հիմնադիրը (1867): Հեղինակ է նաև բալետների, սիմֆոնիաների (1835, 1848), մելոդեկլամացիաների (նվագախմբի հետ), երգերի և այլ գործերի:

ՀԱՐԹՈՒԵԼ (Hartwell) Լելանդ (ծ. 1939), ամերիկացի մանրէաբան: Հիմն. հետազոտությունները վերաբերում են բջիջների բազմացման կարգավորման մեխանիզմներին: Հայտնաբերել է գեների մի խումբ, որոնք կարգավորում են բջջային ցիկլի առաջին փուլը: Նոբելյան մրց. (2001, Պ. *Ներսի* և Թ. *Հանթի* հետ):

ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ, երկրչփ–յան հիմն. հասկացություններից, որի անուղղակի սահմանումը սովորաբար տրվում է երկրչփյան աքսիոմների միջոցով: Դրանք են՝ ա. Հ–յան հետ 2 ընդհ. կետ ունեցող յուրաքանչյուր ուղիղ գիծ գտնվում է այդ Հ–ում, բ. 1 ուղիղ չպատկանող 3 կետով անցնում է միայն 1 Հ., գ. եթե 2 տարբեր Հ–ներ ունեն ընդհ. կետ, ապա նրանց հատումն ուղիղ գիծ է:

ՀԱՐԹՈՒՆ ՕՂԼԻ (Հովհաննես, մոտ 1760–1840), աշուղ: Հ. Օ–ու դավթարը հայտնաբերել և հրատարակել է Արամ *Երեմյանը* Նոր Ջուղայում («Աշուղ Հարթուն Օղլի», 1920), 1946–ին Թեհրանում «Փշրանքներ աշուղական գրականութիւնից» ժող–ում վերահրատարակել աշուղի 36 հայ. և 9 թուրք. երգեր՝ զետեղելով նաև «Արի դիլբար» և «Ծամերդ աբրեշում» երգերի նոտագրությունը: Հ. Օ–ու 32 երգ զետեղված է «Հայ աշուղներ. 17–18 դդ.» (1961) ժող–ում:

ՀԱՐԹՖՈՐԴ (Hartford), ք. ԱՄՆ հս–արլ–ում, Քոնեքթիքութ նահ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 124,8 հզ. (2010): Արդ., առևտրա–ֆին. և մշակութ., ապահովագր. բիզնեսի խոշոր կենտրոն է:

ՀԱՐԺԻՍԻ ԿԱՐԱՎԱՆԱՏՈՒՆ, *Յայջիի կարավանատուն*, միջնադար. Հայաստանի կարավանատներից, Սյունիքով անցնող ճանապարհի վրա (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզի Հարժիս գ–ի մոտ): Կառուցվել է 1343–ին, ներկայում կիսավեր է:

ՀԱՐԻ (Hari), *Զամբի*, գետ Ինդոնեզիայի Սումատրա կղզում: Երկ.՝ շուրջ 600 *կմ*, ավազանը՝ մոտ 40 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 1500 *մ³/վ*: Սկիզբ է առնում Բարիսան լ–շղթայից, անցնում է ճահճացած հարթավայրով և թափվում Հվ–չին. ծովի Բերխալի ծոցուղը: Ծով. նավերի համար անցանելի է մինչև Տելանայպուրա ք.:

«ՀԱՐԻՄԱՆՆԵՐ» (Hariman), ձեռնարկատիր. խումբ ԱՄՆ–ում: Ձևավորվել XIX դ–ի վերջին: Հիմնադիր՝ Է. Հ. Հարիման (1848–1909): Ազդեցության ոլորտը՝ բանկեր, ապահովագր., հանքարդյունահանման ու երկթղ. ընկ–ներ: Ֆին. կենտրոնը «Բրաուն Բրազերս, Հարիման ընդ Քո» բանկիրային տունն է:

ՀԱՐԻՍ Ռոյ (1898–1979), ամերիկացի կոմպոզիտոր: Գործերում օգտագործելով բանահյուս. տարրեր՝ ստեղծել է ազգ. երաժշտ. ոճ:

ՀԱՐԻՍԱ, հայկ. ազգ. կերակուր: Ցորենի ձավարը, հավի, ոչխարի կամ տավարի միսը ջրով եփում են՝ փայտե թիակով հարելով մինչև մածուցիկ դառնալը: Ուտելիս վրան լցնում են հալած յուղ: Հնում համարվել է ծիս. և տոն. կերակուր:

ՀԱՐԻՍԲԵՐԳ (Harrisburg), ք. ԱՄՆ–ում, Փենսիլվանիայի նահագ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 54,5 հզ. (արվարձաններով՝ 643,8 հզ., 2014): Մնդի արդ–յան խոշոր կենտրոն է: Գործում են միջազգ. օդանավակայան, պատմ. թանգարան:

ՀԱՐԻՍՈՆ (Harrison) Բենջամին (1833–1901), ԱՄՆ 23–րդ նախագահը՝ 1889–93–ին՝ Հանրապետ. կուս–յունից: Նպաստել է Ու. *Սևակ–Քինլիի* տարիֆի պրոտեկցիոնիստ. և Շերմանի հակատրեստ. օրենքների ընդունմանը (1890): Առաջին համամերիկ. համաժողովի նախաձեռնողն (1889) է:

ՀԱՐԻՍՈՆ Ուիլյամ Հենրի (1773–1841), ԱՄՆ 9–րդ նախագահը՝ 1841–ի մարտ–ապրիլին՝ վիգերի կուս–յունից: Գեն., անգլո–ամերիկ. պատերազմի (1812–14) ժամանակ՝ ամերիկ. բանակի հրամ–ներից:

ՀԱՐԻՐԻ Ռաֆիկ (1944–2005), Լիբանանի վարչապետ՝ 1992–98, 2000–04–ին: Զոհվել է ահաբեկչ. հարձակման ժամանակ:

ՀԱՐԿԱԴԻՐ ԱՇԽԱՏԱՆՔ, 1. աշխ–ի հաս. ձև, երբ աշխատավորն իր հավելյալ աշխ–ը առանց համարժեքի, ստիպողաբար տալիս է իշխող դասակարգին: Ծագել է մասնավոր սեփականության և դասակարգերի առաջացման հետևանքով: Նախն. ձևը ստրկատիրությունն էր, ապա՝ ավատատիր–ճորտատիր. հասարակարգը:

2. Քր. պատժի տեսակ, երբ դատապարտյալն իրական ազատազրկման փոխարեն կատարում է վարձատրվող որոշակի աշխ.: Որոշ երկրներում նախատեսվում է թեթև և միջին ծանրության, հազվադեպ՝ ծանր հանցագործությունների դեպքում: ՀՀ քր. օրենսգրքով Հ. ա. նախատեսված չէ:

ՀԱՐԿԱԴՐԱՆՔ ՊԵՏԱԿԱՆ, պետ. կառավարման եղանակ, որով հաս., իրավ. կարգի պահպանման կամ ամրապնդման նպատակով զանցառուների նկատմամբ կիրառվում են հարկադրանքի միջոցներ (քաղաքաց., քր. ևն):

ՀԱՐԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ (բուսաբ.), **յարուսականություն**, բուս. համակեցությունների (ֆիտոցենոզներ) շերտավորումը տարբեր բարձր–յան բաղկացուցիչ մասերի՝ հարկերի՝ բավական հստակ սահմանազատված հորիզոններով: Առավել պարզ արտահայտված է անտառներում, որտեղ հարկերը տարբերվում են իրենց կենսաձևերով. առաջին (վերին) հարկը կազմում են լուսասեր ծառերը, երկրորդը (ստորին)՝ քիչ լուսասեր, ցածր ծառերն ու թփերը, ավելի ներքևում պտերներն ու տարբեր խոտաբույսերն են, իսկ հողի մակերեսին՝ մամուռներն ու սնկերը: Գոյություն ունի նաև բույսերի ստորգետնյա Հ., որն արտահայտվում է արմատների երկ–յամբ:

ՀԱՐԿԵՐ, պետության և տեղ. մարմինների սահմանած պարտադիր վճարներ, որոնք գանձվում են իրավաբ. ու ֆիզ. անձանցից և օգտագործվում պետ. ու տեղ. մարմինների բյուջեների եկամտային մասի ձևավորման համար: Ֆին. հարաբերությունների ձև է. ապահովում է ազգ. եկամտի բաշխումն ու վերաբաշխումը՝ սոցիալ–տնտ. խնդիրներին համապատասխան: Լինում են ուղղակի (եկամտահարկ, ԱԱՀ ևն) և անուղղակի (օր.՝ ակցիզային հարկ ևն):

ՀԱՐՃ, կին, որ պահել են թագավորները, բարձրաստիճան կամ հարուստ անձինք՝ իրենց օրինական կնոջ կամ կանանց հետ միաժամանակ: Հին Արևելքում, Հռոմում, Հունաստանում և այլուր Հ. պահելն օրինականացված էր, թեև հարճությունը դիտվում էր որպես նվաստ վիճակ, իսկ Հ–ից ծնված երեխան զուրկ էր ժառանգ. իրավունքից: Հ–ի մասին հիշատակություններ կան Մովսես Խորենացու Պատմության մեջ (գիրք Բ), հայտնի է Դանիել Վարուժանի «Հարճը» (1912) պոեմը:

ՀԱՐՃԼԱՆՔ, գվո Մեծ Հայքի Արցախ նահագ–ում: Հիշատակվում է VII դ–ի «Աշխարհացոյց»–ում:

ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ, ադապտացիայի սինդրոմ, մարդու կամ կենդանիների օրգանիզմի (առավելապես՝ ներզատիչ համակարգի) պաշտպ. հակազդեցությունների ամրողջությունը գերհույզի ժամանակ: Տարբերում են տագնապի (պաշտպ. ուժերի հավաքագրում), դիմակայման (դժվար իրավիճակին հարմարում), հյուծման (ուժեղ և երկարատև գերհույզը կարող է ավարտվել մահով) համախտանիշներ: «Հ. հ.» և «գերհույզ» եզրույթներն առաջարկել է կանադացի ախտաբան Հ. Սելյեն:

ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ադապտացիա (< միջին լատ.՝ adaptation – հարմարում), կենսբ. տեսակի ձևաբանա–ֆիզիոլոգ., վարքային, պոպուլացիոն և այլ առանձնահատկությունների ամրողջություն, որն ապահովում է արտաքին միջավայրի որոշակի պայմաններում առանձյակների առանձնահատուկ կենսակերպի հնարավորությունը: Հ. է նաև հարմարման մշակման շարժընթացը, ֆիզիոլոգիայում և բժշկության մեջ՝ նաև ընտելանալու շարժընթացը:

ՀԱՐՄՈՆ, հարմոնիկա (հուն.՝ harmonikos – համահնչուն, ներդաշնակ), մետաղե լեզվակներով ստեղնավոր օդահունչ փողային երաժշտ. գործիք: Ստեղծել է գերմանացի վարպետ Կ. Ֆ. Լ. Բուշմանը (1822): Տարածված է Եվրոպայի որոշ երկրներում: Տարբերում են Հ–ի ձեռքի (*ակորդեոն*, *բայան* ևն), ոտքի (ֆիսհարմոն ևն), շրթնային տեսակները: Ռուս վարպետները պատրաստել են Հ–ի մի շարք տեսակներ (Տուլայի, մարիական, «Ռուսյանկա», «Լիվեննկա», գերմ., վիեննս. ևն):

ՀԱՐՄՈՆԻԱ, ներդաշնակություն, 1. երաժշտ. արտահայտչամիջոց. միավորում է լադ. ակորդների, նաև ամբողջ. լադատոնայնությունների տրամաբանված հաջորդականությունից գոյացող դինամիկան և երանգավորությունը: 2. Երաժշտության տեսության բաժին. ուսումնասիրում է համահնչյունները և նրանց շաղկապված հաջորդականության օրինաչափությունները:

ՀԱՐՄՈՆԻԿ, պարզագույն պարբեր. ֆունկցիա՝ $f(t) = A\sin(\omega t + \varphi)$. բնութագրում է բարդ տատանումների բաղադրիչ *ներդաշնակ տատանումը* և ունի հիմն. հաճախության (**առաջին հարմոնիկին**) բազմապատիկ ω հաճախություն: Ձայնագիտ–յան և երաժշտության մեջ կոչվում է *օբերտոն* (ինչերանգ):

ՀԱՐՄՈՆԻԿ ԱՆԱԼԻԶ, *մաթեմատիկայի* բաժին. ուսումնասիրում է *պարբերական ֆունկցիաները* եռանկյունաչափ. շարքերի և ինտեգրալների վերլուծելու հարցերը:

ՀԱՐՄՈՆԻԿ ՇԱՐՔ, $1+\frac{1}{2}+\frac{1}{3}+\ldots\frac{1}{n}\ \ldots$ թվային շարքը, որի յուրաքանչյուր անդամը (սկսած 2–րդից) 2 հարևան անդամների միջին *հարմոնիկն* է (տես *Միջիններ*): Հ. շ–ի համար տեղի ունի *զուգամիտության* անհրաժեշտ պայմանը, այսինքն՝ նրա ընդհ. անդամը ձգտում է զրոյի, սակայն Հ. շ. տարամետ է:

ՀԱՐՄՈՆԻԿ ՖՈՒՆԿՑԻԱ, մի քանի փոփոխականի ֆունկցիա, որը որևէ տիրույթում անընդհատ է իր 1–ին և 2–րդ կարգի մասնակի ածանցյալների հետ և բավարարում է *Լապլասի հավասարմանը*:

«ՀԱՐՅՈՒԻՐ ՕՐ», Ֆրանսիայում *Նապոլեոն I*–ի 2–րդ կառավարման ժամանակաշրջանը (1815–ի մարտի 20–ից հունիսի 22–ը)՝ Էլբա կղզուց փախչելուց հետո: Վերականգնված նապոլեոնյան կայսրությանն ընդդիմացել է եվրոպ. պետությունների 7–րդ հակաֆրանս. դաշինքը: Հունիսի 18–ին անգլո–պրուս. բանակները կործանել են Նապոլեոնի բանակը (տես *Վաթերլոոյի ճակատամարտ 1815*): Հունիսի 22–ին Նապոլեոնն ստիպված 2–րդ անգամ հրաժարվել է գահից:

ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ 1337–1453 (ֆրանս.՝ Guerre de Cent Ans, անգլ.՝ Hundred Years' War), պատերազմ Անգլիայի և Ֆրանսիայի միջև: Գլխ. պատճառն Անգլիայի նվաճած (XII դ.) ֆրանս. հողերի (Գիեն, Նորմանդիա, Անժու) և Ֆլանդրիայում գերիշխանության համար պայքարն էր: Առիթը Ֆրանսիայի գահի նկատմամբ անգլիացի թագավոր Էդուարդ III–ի (Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ IV–ի թոռը) նկրտումներն էին՝ Ֆրանսիայի թագավոր Կառլոս IV–ի (ժառանգ չուներ) մահից հետո: Անգլիացիները մի շարք հաղթանակներ են տարել Սլեյսի (1340), Կրեսիի (1346), Պուաթիեի (1356) ճակատամարտերում: 1360–ի Բրետիենի պայմանագրով Անգլիային է անցել Ֆրանս. տարածքների զգալի մասը: 1370–ական թթ–ին անգլիացիները գրեթե ամբողջովին դուրս են քշվել Ֆրանսիայից, իսկ 1415–ին Ազենկուրի ճակատամարտում հաղթել են ֆրանս. զորքերին և, դաշնակցելով Բուրգունդիայի դքսի հետ, տիրել ողջ Հս. Ֆրանսիան (ներառյալ Փարիզը): Պատերազմի ընթացքը փոխվել է *Ժաննա դ'Արկի* գլխավորած զորքերի՝ Օռլեանն ազատագրելուց հետո (1429): Հ. պ. ավարտվել է Բորդոյում՝ անգլիացիների կապիտուլյացիայով (1453–ի հոկտ. 19): Անգլիային է մնացել (մինչև 1558–ը) միայն Կալեն:

ՀԱՐՅՈՒՐԱՊԵՏ, 1. զինվ. ստորաբաժանման (100–յակի) պետ Հին Ռուս. պետությունում (IX–XI դդ.)՝ Մեծ Նովգորոդի (X–XIV դդ.) և այլ իշխանություններում: 2. Ավագ սպայական աստիճան ռուս. բանակի կազակ. զորքերում. համապատասխանել է կանոնավոր բանակի պորուչիկին: 3. Հայ ազգ–ազատագր. պայքարում «Հ.» կոչվել է «յուզբաշի», որը թուրք. նույնիմաստ կոչում է:

«168 ԺԱՄ», հաս–քաղ., վերլուծ. թերթ (2004–ից, Երևան): Հիմնադիր–խմբ.՝ Սաթիկ Սեյրանյան:

ՀԱՐՈԼԴ II (Harold II, ծ. թ. անհտ–1066), Անգլիայի անգլո–սաքսոնացի վերջին թագավորը՝ 1066–ի հունվ–հոկտ–ին: Երկրի փաստացի տիրակալը՝ 1053–ից: Զոհվել

է նորմանների դեմ Հասթինգսի ճակատամարտում:

ՀԱՐՈՅԱՆ Հարություն Ասատուրի (1919–1974), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դ-ր (1974): Աշխ-ները վերաբերում են քլորմեթիլ. ռեակցիայի, արոմատիկ և հետերոցիկլիկ միացությունների քիմիային: Նրա ղեկավարությամբ սինթեզվել են դիմեկումարոն, դիբոտին, գումետօքս դեղանյութերը:

ՀԱՐՈՅԱՆ Հմայակ Վարազդատի (ծ. 1949), ՀՀ բանակի զեն-մայոր (1994): 1991-ից ծառայել է ՀՀ ԶՈՒ-ում. 1992–93-ին՝ Արլ., 1993–94-ին՝ Հվ. զորախմբերի հրամ., 1994–98-ին՝ ՀՀ պաշտպ-յան նախարարի տեղակալ, 1998–2001-ին՝ ՌԴ-ում ՀՀ դեսպանության ռազմ. կցորդ, 2001–04-ին՝ ՀՀ արտակարգ իրավիճակների վարչության պետ:

Լ.Ղ.ՀՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի, ՀՀ «Սբ Վարդան Սամիկոնյան» (2009) շքանշաններ:

ՀԱՐՈՆԻԱ, **Հարոնիե** (լատ.՝ Haronia, Haronie, Aronie), բերդ Կիլիկյան Հայաստանում՝ Ջահան գետի ստորին հոսանքի ձախ ափին: 1220-ական թթ-ից Հ. վերածվել է արքունի բերդի: 1236-ին Հ., շրջակա կալվածքներով, վանքերով ու գյուղերով հանդերձ, Հեթում Ա թագավորը պարգևել է Տևտոնյան ուխտի ասպետներին: 1337-ին Հ. զավթել է Եգիպտոսի սուլթանը:

ՀԱՐՊԵՐ (Harper) Սթիվեն Ջոզեֆ (ծ. 1959), Կանադայի վարչապետ՝ 2006–15-ին: 2004-ից՝ Կանադայի պահպանող. կուսյան առաջնորդ:

ՀԱՐՊԻԱ, ճուռակների ընտանիքի գիշատիչ թռչուն: Երկ.՝ մինչև 1 մ: Գլխին ունի փունջ: Ապրում է Ամերիկայի արևադարձներում: Հ-ները որսում են կապիկներ, ծույլեր, խոշոր թութակներ: Փետուրները հնդկացիներն օգտագործում են որպես զարդարանք: Գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՀԱՐՊԻԱՆԵՐ, փոթորկի աստվածուհիներ հուն. դից-յան մեջ: Պատկերվել են աղջկա գլխով թևավոր հրեշների տեսքով: Փիսք. իմաստով՝ չար կին:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ, հարսանիքի առանձին դրվագների համար նախատեսված երգերի ու պարերգերի շարք: Երգերի թեմաները վերաբերում են փեսային ու հարսին, նրանց ծնողներին, ընկերներին, ծեսի մյուս «դերակատարներին» և ուր.: Ուշագրավ են ծաղկոց երգերը. երգում են հարսի ընկերուհիները՝ նրան զուգելու, զարդարելու ժամանակ: Առանձնանում են «Վարդ, զքե չըմ սիրի», «Դուն հալալ մերիկ», «Մեր թագվորն էր խաչ»,«Գացեք բերեք թագվորամեր» և այլ երգեր: Կան նաև ծեսի առանձին դրվագներին նվիրված հատուկ պարերգեր և գործիք. եղանակներ («Կալոսի պոկեն» զուռնայի հանդիսավոր եղանակը ևն):

ՀԱՐՍԱՆՅԻ, **Հարսանյի** (Harsanyi), Ջոն (1920–2000), ամերիկացի տնտեսագետ: Մինչև 1956-ը բնակվել է Հունգարիայում: Խաղերի տեսության մեջ Ջ. *Նեշի* մոդելը լրացրել է (1960-ական թթ.) հակառակորդների վարքի կանխատեսելիության հայեցակարգով, որը հիմնվում է նրանցից յուրաքանչյուրի՝ նախընտրելի գործողության հիմնավորված ընտրության վրա:

Նորելյան մրց. (1994, Ռ. *Զելտենի* և Ջ. Նեշի հետ):

ՀԱՐՄՆԱԽՈՏ (Physalis), **բոջոջ, բշտի դեղ**, մորմազգիների ընտանիքի միամյա և բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է ավելի քան 100 տեսակ՝ մեծ մասամբ՝ Հս. և Հվ. Ամերիկայում: Մննդ. և գեղազարդիչ բույս է: Մննդ. Հ-երը բաժանվում են 2 խմբի՝ հատապտղային (պերուական, խոնարհված ևն) և բանջարեղեն (սոնձապտուղ ևն): Աճեցնում են Ասիայում, Հս. և Հվ. Ամերիկայում, Աֆրիկայում, Եվրոպայում: ՀՀ-ում հանդիպում է 1 տեսակ՝ սովոր. Հ.՝ Լոռու, Տավուշի, Սյունիքի մարզերում:

ՀԱՐՄՆՅԱՅ, միջատների (բզեզներ, թիթեռներ, երկթևանիներ, թաղանթաթևավորներ) զարգացման փուլ՝ լրիվ կերպարանափոխությամբ: Հ-ի փուլում միջատը ձևափոխվում է հասունի (իմագո): Տես նաև *Մետամորֆոզ*:

ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ, **արքայատոհմ, դինաստիա** (հուն.՝ dynasteia – գերիշխանություն), նույն տոհմի տիրակալների հաջորդականություն, որոնք հերթափոխում են միմյանց ազգակցության և ժառանգականության իրավունքի հիման վրա:

ՀԱՐՎԱԾ պինդ մարմինների, երևույթների ամբողջություն, որոնք առաջանում են շարժվող պինդ մարմինների բախման, նաև հեղուկի կամ գազի հետ պինդ մարմնի որոշ տեսակի փոխազդեցությունների դեպքում: Հ-ի տևողությունը սովորաբար շատ կարճ է (վայրկյանի տասհազարերորդ. մասերից մինչև միլիոներորդ. մասերը), իսկ բախվող մարմինների հպման մակերևույթին զարգացող ուժերը (հարված. կամ ակնթարթ. ուժեր)՝ շատ մեծ: Հ-ի հետևանքով կարող են առաջանալ մնացորդ. դեֆորմացիա, ձայն. տատանումներ, մարմինների տաքացում, նրանց նյութերի մեխ. հատկությունների փոփոխություն և այլ երևույթներ, իսկ կրիտիկ. արագությունը գերազանցող բախման արագությունների դեպքում՝ նաև մարմինների քայքայում տեղում: Հ-ի տարրական տեսությունում Հ-ի ընթացքում արագության փոփոխությունը բնութագրում է $k < 1$ վերականգնման գործակիցը, որի արժեքը կախված է բախվող մարմինների նյութերից: Օր.՝ փայտե գնդերի $k = 1/2$, պողպատե գնդերի $k = 5/9$, փղոսկրե գնդերի $k = 3/9$: $k = 1$-ի դեպքում Հ. անվանում են բացարձակ առաձգական, իսկ $k = 0$-ի դեպքում՝ բացարձակ ոչ առաձգական:

ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԱԼԻՔ, գերձայն. արագությամբ տարածվող անցումային բարակ տիրույթ, որում տեղի է ունենում նյութի խտության, ճնշման, ջերմաստիճանի և արագության թռիչք. աճ: Հ. ա. աճում է պայթյունների, գերձայն. արագությամբ բութ մարմինների թռիչքի, էլ. հզոր պարպումների ժամանակ ևն:

«ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲԱՆՎՈՐ», պարբերաթերթ (1933–34, Երևան): ՀԱՄԽ-ի և արհմիությունների կենտր. վարչությունների պաշտոնաթերթը: Խմբ.՝ Հմայակ *Միրաա*:

ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, երաժշտ. գործիքներ, որոնք հնչում են փայտե (մետաղե) ձողիկներով, թակիչով, ձեռքի ափով (մատներով) հարվածելու միջոցով: Տարբերում են որոշակի բարձր-յան *(լիփավրներ, զանգեր, զանգակներ, վիբրոֆոն, տուբոֆոն, չելեստա, քսիլոֆոն, մարիմբոֆոն, գոնգ* ևն) և որոշակի բարձրություն չունեցող (մեծ ու փոքր թմբուկներ, տամ-տամ, *եռանկյունի, ծնծղաներ, կաստրանիևտներ* ևն) Հ. ե. գ.: Ժող. երաժշտության մեջ առավել տարածված են *ցիմբալ, սանթուր, դհոլ, դափ, դոյրա, դիպլիպիտո* և այլ տեսակներ:

«ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐՆԻԿ», մարզ. ամսագիր (1932–36, Երևան, 1935–36-ին՝ «Ֆիզկուլտուրա և տուրիզմ», ապա՝ «Ֆիզկուլտուրա և սպորտ»): ՀԽՍՀ ֆիզկուլտկոմիտեի և Երևանի քաղխորհրդի հրտ-յուն:

ՀԱՐՎԱՐԴԻ ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ, գիտ. հիմնարկ ԱՄՆ Հարվարդ ք-ում: Հիմնադրվել է 1839-ին, 1955-ին Հ. ա. ա-ին միացել է Սմիթսոնյան աստղաֆիզ. դիտարանը (Քեմբրիջ): Ուսումնասիրվել են փոփոխ. աստղերը: Կատարում են աստղերի, միգամածությունների, գալակտիկաների լուսաչափ. և սպեկտրալուսաչափ., ռադիոաստղադիտ. և աստղերի ներքին կառուցվածքի հետազոտություններ:

ՀԱՐՎԱՐԴԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ԱՄՆ հնագույն համալսարաններից: Հիմնադրվել է Քեմբրիջում (Բոստոն ք-ի շրջագծում է) 1636-ին՝ որպես քոլեջ: 1639-ից կոչվել է անգլիացի միսիոներ Ջոն Հարվարդի անունով, որն իր ունեցվածքը կտակել է քոլեջին: XIX դ-ի 1-ին կեսից՝ համալսարան: Ներառում է 11 ակադեմ. ստորաբաժանումներ: 2015-ին ուներ ավելի քան 21 հզ. ուսանող: Հ. h-ի շրջանավարտներից 8-ը դարձել են ԱՄՆ նախագահ, 75-ը՝ Նորելյան մրցանակակիր: Համալսարանի գրադարանն ԱՄՆ-ի ամենախոշոր և աշխարհում 3-րդ ակադեմ. գրադարանն է: 1954-ից Հ. h-ում գործում է հայագիտ-յան ամբիոն:

ՀԱՐՎԵՅ (Հարվի, Harvey) Ուիլյամ (1578–1657), անգլիացի բժիշկ, ֆիզիոլոգիայի և սաղմնաբանության հիմնադիրը: Նկարագրել է արյան շրջանառության մեծ և փոքր շրջանները: «Անատոմիական հետազոտություններ կենդանիների սրտի և արյան շարժումների մասին» աշխ-յան մեջ առաջ է քաշել ուսմունք, որը հերքում էր Գալենի ժամանակներում իշխող պատկերացումները, որի համար նրան քննադատել են Գալենի և Արիստոտելի հայացքները պաշտպանող գիտնականները:

ՀԱՐՏԼԵԲԵՆ (Hartleben) Օտտո Էրիխ (1864–1905), գերմանացի գրող: Հեղինակ է հաս. բարքերը ծաղրող «Հյուրընկալ պաստորի մասին» (1895) և այլ պատմվածքների, «Անժելա» (1890), «Վարդերի երկուշաբթին» (1900) պիեսների:

ՀԱՐՏՖԻԼԴ (Heartfield) Ջոն (Հելմուտ Հերցֆելդ, Herzfeld, 1891–1968), գերմանացի գրաֆիկ: Առաջիններից է օգտագործել ֆոտոմոնտաժը՝ սուր բովանդակությամբ հակաֆաշիստ. պլակատներ ստեղծելու համար («Ինչպես միջնադարում..., այնպես էլ Երրորդ ռայխում», 1934, «Խաղաղության ճանապարհը», 1936): Պատկերազարդել է գրքեր:

ՀԱՐՑ, լ-զանգված Գերմանիայում: Բարձր.՝ 1142 *մ* (Բրոկեն լ.): Լանջերը մասնատված են էլրա և Վեգեր գետերով: Ծածկված է անտառներով: Նախալեռները հերկված են: Կան պղնձի, արծաթի, ցինկի, կապարի հանքավայրեր: Զարգացած է գրոսաշրջությունը:

ՀԱՐՈՒԹ (Հարությունյան) Եղիշե (1898–1974), դերասան: Սազդա *Հարութի* հայրը: 1921–74-ին խաղացել է «Անդրանիկ» թատերախմբում: 1930-ին Լոս Անջելեսում հիմնադրել է «Այվոր» թատրոնը: Նկարահանվել է ամերիկ., եգիպտ., բուլղ., անգլ. և այլ ֆիլմերում («Հինգ մատ», «Իմ որդի Ջոնը», «Եգիպտացին» ևն):

ՀԱՐՈՒԹ (Հարությունյան) Լևոն Տիգրանի (1894–1957), դերասան: ՀԽՍՀ վաստ.

արտիստ (1954): 1921–53-ին (ընդհատումներով)՝ Փարիզի «Օդեոն», «Կոմեդի Ֆրանսեզ», «Ատելիե», ՀԽՍՀ շրջիկ թատրոնների, 1953–56-ին՝ ԵՊՀԹ դերասան (Օթարյան՝ Շիրվանզադեի «Պատվի համար», Պաղտասար՝ Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար», ևն): Նկարահանվել է կինոյում («Փախստականներ, 1928, «Գնչուներ», 1930, երկուսն էլ՝ Հոլիվուդ, ԱՄՆ, «Ձանգեզուր», 1938, «Քաջ Նազար», 1940, երկուսն էլ՝ Հայֆիլմ):

ՀԱՐՈՒԹ (Հարությունյան) Սագդա Եղիշեի (ծ. 1936), թատրոնի և կինոյի դերասանուհի: Եղիշե ***Հարութի*** դուստրը: Խաղացել է Բևեռլի Հիլզի բեմ. ընկերակցության թատրոնի ներկայացումներում (Սոֆոկլեսի «Էլեկտրա», Ժ. Անույի «Անտիգոնե» ևն): 1958–93-ին նկարահանվել է կինոյում («Նավի բժիշկը», «Ինն ու կես նինձյա», «Պարոն Քիլդեր», «Իմ կյանքը» ևն): Նկարահանել է Հայաստանին նվիրված ֆիլմ (1968): 1969-ին հանդես է եկել Երևանի դրամատիկ., Գ. Սունդուկյանի անվ. թատրոններում:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ Քրիստոսի, Հիսուս Քրիստոսի վերակենդանացումը խաչելությունից և հուղարկավորությունից հետո՝ ըստ քրիստ. կրոն. պատկերացումների: ***Քրիստոնեության*** հիմն. վարդապետություն է: Իր մահով և հարությամբ նա հաղթել է մահին և ճանապարհ բացել դեպի հավերժ. կյանք: Քրիստոսի Հ. փառաբանելու նպատակով ամեն կիրակի եկեղեցիներում մատուցվում է Սր Պատարագ, ինչպես նաև նշվում է եկեղեց. տարվա գլխ.՝ Սր Հարության տոնը՝ ***Զատիկը:*** Լինելով քրիստ. քարոզչության գլխ. բովանդակությունը՝ Հ. դարձել է Պատարագի հիմն. գաղ-ը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ալեքսանդր Գրիգորի (1920–2012), կոմպոզիտոր: ՀՀ (1962), ԽՍՀՄ (1970) ժող. արտիստ: ԵՊԿ պրոֆ. (1977): 1954–91-ին՝ Հայֆիլհարմոնիայի գեղ. ղեկ.: Հեղինակ է «Սայաթ-Նովա» օպերայի (1968), «Հայրենիք» կանտատի (խոսք՝ Ա. Գրաշու և Սարմենի, 1948), «Տոնական նախերգանք»-ի (1949), «Շեփորի կոնցերտ»-ի (1950), «Հայկական ռապսոդիա»-ի՝ 2 դաշնամուրի համար (համահեղ.՝ Առնո ***Բաբաջանյան***, 1950), սիմֆոնիայի (1957), սիմֆոնիետի (1966), «Հայրենիքիս հետ» երգ-կանտատի (Հ. Թումանյանի տեքստերով, 1969), դաշնամուր. մանրանվագների, կոնցերտների, շեփորի և նվագախմբի ռապսոդիայի (1990), տրիո-սյուիտների (1992, 1998), կինոերաժշտության և այլ գործերի, նաև «Հուշեր» (2000) գրքի:

ԽՍՀՄ Պետ. (1949, 1973), ՀԽՍՀ ՄՆ Ա. Խաչատրյանի անվ. (1986) մրց-ներ, ՀՀ «Սր Մեսրոպ Մաշտոց» (2001), ՀԱԵ «Սր Սահակ-Սր Մեսրոպ» (2004) շքանշաններ, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (1998), ՌԳԱ Ա. Պ. Ալեքսանդրովի անվ. ոսկե մեդալ (Մոսկվա, 1977), «Օրփեոս» դիպլոմ (ԱՄՆ, 1983), ՄՆ ՀՀ «Կոմիտաս» հուշամեդալ (2008):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ալեքսանդր Երեմի (1925–1981), ռազմ. տեխնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1980): Գնդ. (1969): Աշխ-ները վերաբերում են հրետան. զենքի նախագծմանն ու կիրառությանը, բալիստիկ զենքի նախագծման տեսությանը, ռեակտիվ շարժիչների ջերմատեխնիկային և ջերմադինամիկային: ԽՍՀՄ Պետ. մրց. (1981):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Այդին Ղուկասի (1918–1991), ավագ սերժանտ: ԽՄ հերոս (24.03.1945): Հերոսի կոչման արժանացել է 1944-ի մայիսին Սևաստոպոլի ազատագրման ժամանակ ցուցաբերած արիության համար: Մասնակցել է նաև Լեհաստանի ազատագրման, Օդերի գետանցման և Բեռլինի գրավման մարտերին:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Անահիտ Լևոնի (ծ. 1958), գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (2002): Լևոն ***Հարությունյանի*** դուստրը: ՌԴ Բժշկատեխ. (ՌԲՏԱ) Տեղեկատվայնացման միջազգ. ակադ-ների անդամ (2007), վերջինիս հայկ. մասնաճյուղի տնօրենն: Երևանի «Հայբուսակ» համալսարանի ռեկտոր (1993–2015), Կրթության միջազգ. ակադ-ի հիմնադիր-նախագահ (2006–ից):

ԱՄՆ Կենսագր. ինստ-ի «Տարվա մարդ» (1998):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Անժելիկա Երվանդի (1926–2004), երգչուհի (քնարակոլորատուր. սոպրանո): ՀՀ ժող. արտիստ (1977): ԵՊԿ պրոֆ. (1991): 1958–88-ին՝ ԵՕԲԹ մենակատարուհի (Դեզդեմոնա՝ Ջ. Վերդիի «Օթելլո», Դոննա Աննա՝ Վ. Մոցարտի «Դոն Ժուան», Օլիմպիա՝ Տ. Չուխաճյանի «Արշակ Բ», ևն): Մ. Պ. Մուսորգսկու անվ. համամիութ. մրցույթի 2-րդ մրց. (1964):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (Տեր-Խաչատրյան) Աշխեն Քրիստափորի (1894–1979), քիմիկոս: Քիմ. գիտ. դ-ր (1950), պրոֆ. (1951): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1967): Աշխ-ները վերաբերում են հանրապետության հանք. պաշարների, սորբենտների, ներկանյութերի հատկություններին: Զբաղվել է նաև միջնադար. հայաստանում ներկերի ու թանաքների պատրաստման ու գործածության պատմության հարցերով:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Աշոտ Հովսեփի (1911–1986), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1968): 1963-ից եղել է ՀՀ գլխ. արխիվ. վարչության պետ, ***«Բանբեր Հայաստանի արխիվների»*** հանդեսի գլխ. խմբ.: Աշխ-ները վերաբերում են ԱՀՊ-ի պատմությանը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Աշոտ Մկրտչի (ծ. 1927), ճարտարագետ, արտադր-յան կազմակերպիչ, գյուտարար: Տեխ. գիտ. թեկնածու: ՀՀ վաստ. ճարտարագետ (1964): 1958–71-ին՝ Արզնու տեխ. ճշգրիտ քարերի գործարանի տնօրեն, 1971–94-ին՝ տարբեր ԱՄ-ների գլխ. տնօրեն: ՀՀ Պետ. մրց. (1977, 1980):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Աշոտ Սարգսի (1909–2003), ագրոքիմիկոս: Գղտ. գիտ. դ-ր (1961), պրոֆ. (1963): Աշխ-ները վերաբերում են բազմամյա տնկարկների, հատկապես՝ խաղողի վազի պարարտացման, բույսերի բերքատվության բարձրացման հարցերին: ՀՀ-ում առաջինն է կիրառել բարդ, համակցված պարարտանյութեր և միկրոտարրեր: Մշակել է այգիներում պարարտանյութերի կիրառման տարբերակված՝ նոր համակարգ՝ ըստ արտադրվող գինիների տիպերի:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ավագ Արամայիսի (ծ. 1969), պատմաբան, խմբ.: Պատմ. գիտ. թեկնածու (2004): 2003–09-ին՝ ՀԱԱ փոխտնօրեն, 2009–17-ին՝ ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» զինվ. թանգարանի տնօրեն: Հեղինակ է «Գարեգին Նժդեհի 1921 թ. Թավրիզի դատավարությունը» (2004), «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հասարակական և դիվանագիտական գործունեությունը 1918–1920 թվականներին» (2004), «Սևրի պայմանագիրը և հայ հասարակական-քաղաքական միտքը» (2004) մենագրությունների: Կազմել է «Հայոց ցեղասպանություն և Հայկական հարց. գրքերի մատենագիտություն (1860–2010)» (2014) և այլ ժող-ներ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Արա Արմենի (1928–1999), քանդ.: ՀՀ ժող. նկարիչ (1977): ԽՍՀՄ Գեղարվ. ակադ-ի ակադ. (1988), պրոֆ. (1988): Ստեղծագործել է մոնումենտալ և հաստոց. քանդ-յան բնագավառում [«Մայր Հայաստան», հուշարձան (1967), «Սայաթ-Նովա», աղբյուր-հուշարձան (1963), «Վահագն Վիշապաքաղ» (1965) և «Արծիվ շինարար» (1966)՝ Երևանի հս. և հվ. մուտքերի քանդակները, Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի մուտքի հարթաքանդակները (1966), Սարդարապատի հուշահամալիրը (1968), «Մուսալեռ» (1975) հուշակոթող-թանգարանը, «Ծովինար» բարձրաքանդակը (1976), «Միեր Մկրտչյան» (1979) դիմաքանդակը, «Կոմիտաս» (1988) հուշարձանը ևն:

ԽՍՀՄ «Պատվո նշան» և Ժողովուրդների բարեկամության շքանշաններ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Արայիկ Վլադիմիրի (ծ. 1973), ԼՂՀ վարչապետ՝ 2007-ից: Տեխ. գիտ. թեկնածու (2013), «Ազատ հայրենիք» կուս-յան նախագահ (2005–07 և 2009-ից): Մասնակցել է ԼՂՀ ինքնապաշտպ-յան և ազատագրման գործողություններին (1992–94): Եղել է ԼՂՀ ԱԺ մշտ. հանձնաժողովի նախագահ (2005–07):

ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի (2009), «Գրիգոր Լուսավորիչ» (2016) շքանշաններ, «Շուշիի ազատագրման համար» մեդալ (2003):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Արծրունի Մարտիրոսի (1907–1994), դերասան: ՀՀ ժող. արտիստ (1956): 1928–68-ին (ընդհատումներով)՝ Լենինականի (1941–45-ին՝ տնօրեն), Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնների, 1969–75-ին՝ ԵՊԹ դերասան (Ոսկան՝ Շիրվանզադեի «Չար ոգի», Գառնակերյան՝ Ն. Զարյանի «Փորձադաշտ», Կլեշչ՝ Մ. Գորկու «Հատակում», ևն):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Արմեն Գրիգորի (ծ. 1957), քիթկոկորդականաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1997), պրոֆ. (1998): Աշխ-ները վերաբերում են ներքին ականջի փորձարար. և կլինիկ. ֆիզիոլոգիայի, ախտաբանության և իմունաբանության, քթի հարակից ծոցերի հիվանդությունների ախտորոշման, բուժման և կանխարգելման հարցերին: ՌԲԳԱ և արտ. մի շարք ակադ-ների անդամ:

Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2000):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Արմեն Շուրայի (ծ. 1964), իրավաբան: Իրավաբ. գիտ. դ-ր (1997), պրոֆ. (2001): 2006–11-ին՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան, 2011–15-ին՝ ՄՄԿ-ի գլխ. քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Կենտր. Ասիայում, 2015-ից՝ Մարդու իրավունքների եվրոպ. դատարանի դատավոր: Աշխ-ները վերաբերում են սահմանադրահրավ. խնդիրներին, եվրոպ. իրավունքին, ընտրական համակարգին: Բնության և հաս-յան մասին միջազգ. ԳԱ անդամ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Արմինե Գագիկի (ծ. 1974), մանկաբարձ-գինեկոլոգ: Գագիկ Գ. ***Հարությունյանի*** դուստրը: Բժշկ. գիտ. դ-ր (2012): Աշխ-ները վերաբերում են մանկաբարձության և գինեկոլոգիայի խնդիրներին:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Արշալույս Ֆրունզեի (ծ. 1977), դերասան, ռեժ.: ՀՀ վաստ. արտիստ (2015): 1996-ից՝ ԵԿԹ-ի դերասան:

Նկարահանվել է «Համբառնալ» (Մոսֆիլմ), «Լուսավորչի կանթեղը», «Ընկեր Փանջունի» (երկուսն էլ՝ Հայֆիլմ), «Խաչագողի հիշատակարանը», «Դիպուկահարը» և այլ գեղ. ֆիլմերում: Բեմադրել է «Գրիգոր Լուսավորիչ» ռոք-օպերա ներկայացումը (2001), նկարահանել Ա. Սուքիասյանի «Թափառում» ռոք-օպերա ֆիլմը (նաև խաղացել), «Դիպուկահար-2» (2013, Ռուսաստան) արկած. մարտաֆիլմը: 2009-ից՝ «Երկաթ» մշակութ. կենտրոնի ղեկ.: ՀԹԳՄ «Արտավազդ» մրց. (2013):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Աբշակ Հակոբի (1869–1936), դերասան: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1934): 1887-ից խաղացել է Թիֆլիսի, Բաքվի հայկ. թատրոններում, նաև Գ. Պետրոսյանի, Հ. Աբելյանի և ուր. խմբերում (Պեպո, Ջիմզիմով, Ջամբախով՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», «Խաթաբալա», Սաղաթել՝ Շիրվանզադեի «Պատվի համար», Ցագո, Կլավդիոս՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», «Համլետ», ևն): Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնում եղել է Պեպոյի (Գ. Սունդուկյանի «Պեպո») 1-ին դերակատարը (1922):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Արտաշես (1873–1915), բանաստեղծ, բանասեր, թարգմանիչ: Հեղինակ է «Եղիա Տեմիրճիպաշյան», «Մատթեոս Մամուրյան», «Շիրվանզադե» գր. դիմանկարների, «Ինտրա և իր «Ներաշխարհը»», «Դանիել Վարուժան և իր նոր գիրքը» աշխ-ների, «Գավառի կյանքեն», «Թափառումներ» խորհրդածությունների, «Լքուած քնար» (1902), «Երկունք» (1906), «Նոր քնար» (1912) բանաստեղծությունների ժող-ների: Թարգմանել է Լ. Ն. Տոլստոյի, Մ. Գորկու գործերից: Մնծ եղեռնի զոհ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Արտեմ Միքայելի (ծ. 1945), բանաստեղծ, գրականագետ, թարգմանիչ: Բանասիր. գիտ. դ-ր (1989), պրոֆ. (1991): Միքայել *Հարությունյանի* որդին: Հեղինակ է «Նշանների երկիր» (1977), «Տեսադաշտ» (1979, ռուս.՝ 1983), «Հրդեհը հինավուրց հողի» (1993), «Նամակ Նոյին» (անգլ.՝ 1995, ամերիկ. մի շարք համալսարաններ ներկայացրել են Նորելյան մրց-ի, հայ.՝ 1997), «Հուդայի արձակուրդը» (2003), «Հեռուստապեմներ «Շուշի» և «Բաբելոն» հյուրանոցների աշտարակից» (2010) և այլ բանաստեղծությունների ու պոեմների ժող-ների, հոդվածների, «Գրական ուղղությունների պայքարը անգլիական վեպում 20-րդ դ. սկզբին» (1992) և այլ աշխ-ների: Անգլ-ից թարգմանել է Փ. Բալաքյանի, Ու. Ուիթմենի, Ջ. Ջոյսի և ուր. գործերից:

ԽՍՀՄ ԳՄ Մ. Գորկու (1983), Դիլան Թոմասի (1983, Անգլիա), Ռընե Շարի (1988, Ֆրանսիա), ԹՄՄ գր. (1992), ՀՀ Պետ. (2003) մրց-ներ, ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալ (2011), Ստոկհոլմի (2008), Ստամբուլի (2016) միջազգ. փառատոների մրց-ներ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Արտուշ Թադևոսի (1942–2012), ՀՀ բանակի գեն-մայոր (1989): 1982-ին մասնակցել է ԽՍՀՄ ռազմ. գործողություններին Աֆղանստանում: 1982–86-ին՝ Անդրկովկաս. ՋՕ մոտոհրաձգ. գնդի հրամ.: 1992-ին՝ ՀՀ պաշտպ-յան նախարարի 1-ին տեղակալ: 1986–92 և 1996–2005-ին՝ ՀՀ զինվ. կոմիսար: Մասնակցել է ՀՀ և ԼՂՀ սահմանների ինքնապաշտպ. և ազատագր. ռազմագործողությունների նախապատրաստմանն ու իրագործմանը: Լենինի, Կարմիր դրոշի, Աֆղանստանի Դեմոկրատ. Հանրապետության «Աստղ» 3-րդ, ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանների շքանշաններ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Բաբկեն Բարեղամի (1925–2015), թատերագետ: Արվեստագիտ. դ-ր (1970): Հեղինակ է «Սովետահայ թատրոնի տարեգրություն» (գիրք 1, 2, 1961, 1969), «XIX–XX դդ. հայ թատրոնի տարեգրություն» (հ. 1–3, 1980–81), «Հայ սովետական թատրոն. 1917–1977» (1985), «Խորհրդային թատրոնի տարեգրություն. 1961–1970» (գիրք 3-րդ, 2008), «Վահրամ Փափազյան: Կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1888–1968)» (2012, բոլորը՝ ռուս.) աշխ-ների, «Թատերական հանրագիտարանում» (ռուս., հ. 1–5, 1961–67, Մոսկվա) հայ թատրոնին վերաբերող հոդվածների:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Բաբկեն Հարությունի (1941–2013), պատմաբան, քարտեզագետ: Պատմ. գիտ. դ-ր (1993), պրոֆ. (1994): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2009): Հրատարակել է շուրջ 100 պատմ. քարտեզներ, այդ թվում՝ «Հայոց պատմության ուսումնական ատլասը» (I մաս, 2004): «Հայաստանի ազգային ատլասի» (2008) 2-րդ հատորի գլխ. խմբ.: Աշխ-ները վերաբերում են Հայաստանի հին շրջանի ու վաղ միջնադարի պատմությանը, մասնավորապես՝ «Աշխարհացոյցի» քննությանը, պատմ. Հայաստանի գվո-ների ու բնակավայրերի տեղադրությանը: Բնության և հաս-յան մասին գիտ-յունների միջազգ. ակադ-ների (1998) անդամ:

«Արարատ» (2001, Ֆրանսիա), «Եկատերինա Մեծ» և «Ոսկե արծիվ ոսկե թագով» (երկուսն էլ՝ Գերմանիա) շքանշաններ, ՀՀ «Մովսես Խորենացի» (2006), ԵՊՀ ոսկե և ԵԳՄ Ա. Շվայցերի անվ. մեդալներ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Բենիկ Նիկոլայի (ծ. 1946), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (1990), պրոֆ. (1996), բուժծառայության գնդ.: Աշխ-ները վերաբերում են վնասվածքների բուժման արագացման խթանման հարցերին: Գործուն մասնակցություն է ունեցել ՀՀ բանակի բժշկ. ծառայության հիմնադրման, հոսպիտալների կազմակերպման աշխ-ներին: ՀՀ ԱՆ Կուրորտաբանության և ֆիզ. բժշկության ԳՀԻ տնօրեն (2002-ից), ՌԲՆԳԱ ակադ. (1998), ՌԲՏԳԱ անդամ, ՀՄ նախագահ (2001):

Վ. Ի. Վեռնադսկու 1-ին աստիճանի ոսկե աստղ (2001), ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշաններ, ԼՂՀ «Երախտագիտության» մեդալ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գաբրիել Գրիգորի (1894–1953), մանկաբարձ-գինեկոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (1953): ՀԽՍՀ վաստ. բժիշկ (1944): Զբաղվել է Հայաստանում մանկաբարձության և գինեկոլոգիայի պատմության հարցերով:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գագիկ Աշոտի (ծ. 1947), քաղ. վերլուծաբան, խմբ.: Քիմ. գիտ. թեկնածու (1980): 1988–2000-ին՝ ՀՀ ԳԱԱ Կիրառ. ֆիզիկայի ինստ-ի փորձարար. գործարանի, միաժամանակ՝ «SunEnergy» հայ-հոլ. ընկ-յան գործադիր-տնօրեն, 2003-ից՝ «*Նորավանք*» գիտակրթ. հիմնադրամի հիմնադիր-տնօրեն, «*21-րդ դար*» (2003-ից), «Գլոբուս» (2006-ից) վերլուծ. հանդեսների հիմնադիր-խմբ.: Հեղինակ է ազգ. ու տեղեկատվ. անվտանգության վերաբերյալ աշխ-ների:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գագիկ Գարուշի (ծ. 1948), իրավաբան, տնտեսագետ, պետքաղ. գործիչ: Իրավաբ. գիտ. դ-ր (1999), պրոֆ. (2004): Արմինե *Հարությունյանի* հայրը: Ունի դատավորի որակավորման բարձրագույն դաս (1998): 1996–2018-ին՝ ՀՀ Սահմանադր. դատարանի, 2018-ից՝ ԲԴԽ նախագահ: «Սահմանադրական արդարադատություն» միջազգ. հանդեսի խմբագր. խորհրդի նախագահ (1997-ից): 1990–91-ին՝ ՀՀ ԳԽ նախագահի տեղակալ, 1991–92-ին՝ ՀՀ վարչապետ, 1991–96-ին՝ ՀՀ փոխնախագահ: Աշխ-ները վերաբերում են սահմանադր. վերահսկողության ու մշակույթի խնդիրներին: Տեղեկատվայնացման միջազգ. ակադ-ի (1997), Սահմանադր. իրավունքի միջազգ. ընկերակցության (1998), ԵԽ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» հանձնաժողովի (1997), Սահմանադր. արդարադատության համաշխ. խորհրդի բյուրոյի (2014–15) անդամ:

ՀՀ «Տիգրան Մեծ» (2016), ԼՂՀ «Սբ Գրիգոր Լուսավորիչ» (1998) շքանշաններ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գագիկ Մարգարի (1945–2006), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1988), պրոֆ. (1994): Հենրիկ և Վիլիկ *Հարությունյանների* եղբայրը: Աշխ-ները վերաբերում են ոչ գծային օպտիկ. երևույթներին՝ համասեռ և ոչ համասեռ միջավայրերում և կառուցվածքներում:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գարուշ Սողոմոնի (1937–1989), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (1985), պրոֆ. (1988): Աշխ-ները վերաբերում են հաս. ամբողջ. արդյունքի վերարտադր-յան, ապրանք. հարաբերությունների տեսության և մեթոդաբանության հարցերին:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գեղամ Ստեփանի (1905–1988), դերասան: ՀԽՍՀ ժող. արտիստ (1956): 1930–47-ին՝ Լենինականի, 1947-ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնների դերասան (Արա Գեղեցիկ՝ Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ», Սուր՝ Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար», Շմավոն՝ Ա. Պապայանի «Աշխարհն, այո, շուռ է եկել», Բարկլեյ-Կուպեր՝ Դելմարի «Հիշիր վաղվա օրդ», ևն): Նկարահանվել է կինոյում («Սայաթ-Նովա», 1960, «Զորի Միրոն», 1979–80, երկուսն էլ՝ հեռուստաֆիլմ, «Քաոս», 1973, Հայֆիլմ):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գեորգի Անաստասի (1913–1996), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1962), պրոֆ. (1968): Աշխ-ները վերաբերում են Այսրկովկասում և Ռուսաստանում բանվ. շարժման (1910–14-ին) պատմությանը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գեորգի Արշակի (ծ. 1932), սպորտ. բժշկության և վերականգնող. բուժման բնագավառի գիտնական: Բժշկ. գիտ. դ-ր (1988), պրոֆ. (1989): ՌԲՏԳԱ թղթ. անդամ (2000): Աշխ-ները վերաբերում են սպորտ. բժշկության, մանկ. սրտաբանության, ֆիզ. դաստիարակության հարցերին:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գոհար Հրայրի (ծ. 1946), ֆիզիկոս-տեսաբան: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (2000), պրոֆ. (2001): Աշխ-ները վերաբերում են պտտվող գերխիտ աստղ. մոդելների՝ էյնշտեյնի տեսության շրջանակներում, էյնշտեյնի և Յորդան-Բրանս-Դիքեյի տեսությունների կիրառություններին:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գրիգոր, **Գորգին Խան** (ծ. թ. անհտ–1763), ռազմ. գործիչ: Բենգալիայի զորքերի գլխ. հրամ.:

1760–63-ին՝ անգլ. գաղութարարների դեմ հնդիկ ժողդ-ի մղած ազատագր. պայքարի ղեկ-ներից: Հնդկաստանի թագավոր Շահ Ալեմ II-ը Հ-ին ճանաչել է Բենգալիայի զորքերի գլխ. հրամ.: Միր Կասիմի և Հ-ի գլխավորությամբ ապստամբները 1760-ի աշնանը Բենգալիան հռչակել են անկախ: Սանտա Դարիա (Գանգեսի վտակներից) հովտում տեղի ունեցած ճակատամարտում անգլիացիները ճնշել են ապստամբությունն ու սպանել Հ-ին:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (Հարությունով) Գրիգոր Արտեմի (1900–1957), կուս., պետ. գործիչ: ՀԿԿ ԿԿ 1-ին քարտուղար՝ 1937–53-ին (1938-ից՝ նաև ՀԿԿ Երևանի քաղկոմի 1-ին քարտուղար): ՌԿ(բ)Կ անդամ՝ 1919-ից: 1946–47-ին ծավալված հայրենադարձության ժամանակ փորձել է լուծել ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին միացնելու հարցը՝ հիմնավորելով հայրենադարձներին տեղավորելու անհրաժեշտությամբ: 1949-ին նամակով դիմել է Ի. Վ. Ստալինին՝ «անբարեհույս» ընտանիքների արտաքսումն Ալթայի երկրամաս կանխելու նպատակով:

Լենինի (4), ՀՄՊ 1-ին աստիճանի, Աշխ. կարմիր դրոշի շքանշաններ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գուրգեն Միքայելի (1905–1973), դերասան: Ադրբ. ԽՍՀ ժող. արտիստ (1957): 1929–49-ին՝ Բաքվի, 1949–71-ին՝ Ստեփանակերտի հայկ. թատրոնների դերասան: Մարմնավորել է բնութագր. և դրամատիկ. դերեր (Գիժ Դանիել՝ Շիրվանզադեի «Չար ոգի», Մեք Գրեգոր՝ Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է», Լուկա՝ Մ. Գորկու «Հատակում», ևն): Նկարահանվել է «Հեղնար աղբյուր» (Ավետիք) ֆիլմում:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Դավիթ Էդիսոնի (ծ. 1963), քաղ–պետ. գործիչ: Տեխ. գիտ. թեկնածու: ՀՀ Արդարադատության նախարար (1998–2007 և 2017-ից), ՀՀ ԱԺ իրավ. հարցերի մշտ. հանձնաժողովի նախագահ (2012–14), Կառ-յան աշխատակազմի ղեկ-նախարար (2016–17): Հեղինակ է 2 մենագրության: ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի (2011), 2-րդ աստիճանի (2012) մեդալներ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Եվգենի Արմենակի (ծ. 1936), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1991), պրոֆ. (2002): Մարիամ *Հարությունյանի* հայրը: Աշխ-ները վերաբերում են հավանականային տեղեկատվության տեսությանը, մաթ. վիճակագրությանը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Երվանդ Սերգեյի (ծ. 1963), ուրոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (2004): Ներդրել է միզապարկի փոխպատվաստման նոր եղանակ, շագանակագեղձի արմատական հեռացման (ՀՀ-ում առաջիններից), անոթ. սեռ. անկարողության ժամանակ առնանդամի ներքին պրոթեզավորման և գերհույզային անմիզապահության դեպքում պրոլենային ժապավենի տեղադրման վիրահատություններ:

ՌԲՈՒԱ անդամ (2004):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Էդվարդ Արզումանի (ծ. 1947), փիլ.: Փիլ. գիտ. դ–ր (2001), պրոֆ. (2002): Աշխ-ները վերաբերում են սոցիալ. փիլ-յան, ազգ. ինքնության և փոխակերպվող հաս-յունների հիմնահարցերին («Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ», 2004 ևն): ՀՀ «Մովսես Խորենացի» (2014), ԵՊՀ ոսկե մեդալներ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Էռնեստ Սուրենի (1935–2003), կենդանաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1996): Նկարագրել է ՀՀ-ում հանդիպող տզերի 480 և հայտնաբերել 44 նոր տեսակներ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Էրիկ Երվանդի (1933–2009), կոմպոզիտոր: Հեղինակ է «Հեքիաթ մեծերի համար», «Մի կաթիլ մեղրը» (ըստ Հ. Թումանյանի, բեմ.՝ 1970) օպերաների, 5 սիմֆոնիայի, «Հայրենիք» օրատորիայի (խոսք՝ Գ. Բանդուրյանի), Կոնցերտ-պոեմի՝ ջութակի և նվագախմբի համար, կոնցերտների, գործիք. սոնատների, խմբերգ. երկերի:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ժորա (Գևորգ) Սաղաթելի (1928–2002), դրամատուրգ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1975): Հեղինակ է «Խաչմերուկ» (1979), «Քո վերջին հանգրվանը» (1986) պիեսների ու կինոպատումների, «Իմ լռությունը» (2003), «Պատուհան դեպի հավերժություն» (2013) պիեսների ու բանաստեղծությունների ժող-ների, «Ոսկե գլիկ» (համահեղ., 1953), «Զախորդ Փանոսը» (1970), «Շրթներն № 4» (1967), «Հարսնացու հյուսիսից» (1974), «Խոշոր շահում» (1982) և այլ կինոսցենարների:

ԽՍՀՄ «Պատվո շքանշան» (1978), ՀԽՍՀ Պետ. (1979), ՀԳՄ Գ. Սունդուկյանի անվ. (1983) մրց-ներ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Իսահակ Ղազարի (1863–1928), փիլ., մանկավարժ: Փորձարար. մանկավարժության հիմնադիրներից հայ իրականության մեջ: Աշխ-ները նվիրված են հոգեբ-յանը, բարոյադաստիարակչ. և գեղագիտ. հարցերին:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Լեոնիդ Ավետիքի (ծ. 1948), ռեժ.: ԼՂՀ արվ. վաստ. գործիչ (1982): ԼՂՀ ժող. արտիստ (2004): 1976–88-ին՝ Ստեփանակերտի (1995-ից՝ գեղ. ղեկ. և տնօրեն), 1989–93-ին, միաժամանակ՝ Երևանի համազգ. թատրոնների դերասան և ռեժ.: Բեմադրել է Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», Մ. Գորկու «Քաղքենիներ», Ա. Կասոնայի «Ծառերը կանգնած են մահանում» և այլ գործեր:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Լեոնիկ Աշոտի (ծ. 1938), երկրաբան, հետախույզ: Երկրբ-հնքբ. գիտ. դ–ր: Աշխ-ները վերաբերում են մոլիբդենի, պղնձի, նիկելի երկրաքիմիայի և նրանց սուլֆիդային հանքավայրերի առաջացման խնդիրներին:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Լյուդմիլա Հակոբի (ծ. 1941), հաս-քաղ. գործիչ, սոցիոլոգ: Փիլ. գիտ. դ–ր (1986), պրոֆ. (1988): 1999–2003-ին՝ «Արժանապատիվ ապագա», 2003-ից՝ «Արժանապատվություն» կուս-յունների հիմնադիր-նախագահ: Աշխ-ները վերաբերում են ՀՀ-ում սոցիալ. փոփոխություններին, հակամարտությունների լուծմանը ևն: ԽՍՀՄ ժող. պատգմ. (1989–91): Եվրախորհրդի «Ինտաս» ընկերակցության գիտ. խորհրդի (2002) և «Սոցիոլոգիական մասնագետներ» խորհրդի (2002) անդամ:

ՀՀ «Մովսես Խորենացի» (1999), ԼՂՀ «Մխիթար Գոշ» (2001) մեդալներ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Լևոն Ասատուրի (1903–1973), հիգիենիստ: Բժշկ. գիտ. դ–ր (1940), պրոֆ. (1941): ԽՍՀՄ ԲԳԱ թղթ. անդամ (1961): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1956): Աշխ-ները վերաբերում են սննդի, կոմունալ հիգիենայի, հատկապես՝ սննդամթերքների մեջ թունավոր նյութերի առաջացման և սննդ. թունավորումների կանխարգելման, նաև Հայաստանում հիգիենայի պատմության հարցերին: Հ-ի անունով է կոչվել Երևանի հիգիենայի և հակահամաճարակային քաղաք. կայանը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Լևոն Գերասիմի (1927–1990), հիգիենիստ: Բժշկ. գիտ. դ–ր (1971): Առաջինն է փորձարար. պայմաններում մշակել աշխ-ի և հանգստի գիտականորեն հիմնավորված ռեժիմներ, առաջարկել հանրապետ. նշանակության միկրոկլիմ. նորմեր:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Լևոն Վռամի (1927–2007), բուսաբան-ծառագետ: Կենսբ. գիտ. դ–ր (1971), պրոֆ. (1982): Անահիտ *Հարությունյանի* հայրը: 1991-ին հիմնել է «Հայբուսակ» համալսարանը: Աշխ-ները վերաբերում են ՀՀ ներքերված և տեղ. ծառաթփային բուսականության կենսաէկոլոգ. առանձնահատկություններին, բնակավայրերի կանաչապատման, նաև բուսաբուժության հարցերին: ՀՀ ՄԳԱ հիմնադիր-ակադ. (2000–ից):

ԱՄՆ կենսագր. ինստ-ի (1998), ՌԴ Մ. Վ. Լոմոնոսովի անվ. ոսկե (2002), ՀՀ «Անանիա Շիրակացի» (2003) մեդալներ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Խոսրով Մելիքի (ծ. 1948), պետ., քաղ. գործիչ: ՀՀ վարչապետ՝ 1992-ի օգոստ–1993-ի հունվին, ՀՀ ԱԺ նախագահ՝ 1998–99-ին, ՀՀ տարածք. կառավարման նախարար՝ 1999–2000-ին, ՀՀ ՔՊՄ կուս-յան հիմնադիր նախագահ (2002-ից), ՀՀ ԱԺ Տնտ. հարցերի մշտ. հանձնաժողովի նախագահ (2017-ից):

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2002):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Խորեն Հովհաննեսի (1891–1950), դերասան: Ադրբ. ԽՍՀ ժող. արտիստ (1943): 1911–20-ական թթ-ին խաղացել է Հ. Աբելյանի, Հ. Զարիֆյանի և ուր. խմբերում, ապա՝ Թբիլիսիի, Բաքվի հայկ. (1935–49) թատրոններում (Կակուլի, Գիժ Մեզի՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», «Քանդած օջախ», Ռուստամ՝ Շիրվանզադեի «Նամուս», Օթելլո՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», ևն):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Կլիմենտ Ամասիայի (ծ. 1940), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1994): Աշխ-ները վերաբերում են հայ ժողդ-ի մասնակցությանը ԵՀՊ-ին և հայկ. զորամիավորումների պատմությանը: Հեղինակ է «Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմին (1939–45 թթ.)» (2001) և «Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941–45)» (2002) և այլ գրքերի:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (Արտենյան) Հակոբ Պողոսի (1888–1943), փիլ., երաժշտագետ, մանկավարժ, լեզվաբան: Փիլ. գիտ. դ–ր (1919): Հեղինակ է «Կանտի իմացաբանությունը» (1910–11), «Մկրտիչ Պեշիկթաշլյան» (1912), «Զարգացման գաղափարի վերլուծությունը» (գերմ., 1919), «Լեզվի մասին» (1934), «Մանյակ» (ժող. երգերի ժող., 1958) աշխ-ների: Անհիմն բռնադատվել է (1941), մահացել չպարզաբանված հանգամանքներում:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Համազասպ Հովակիմի (1902–1971), դիվանագետ: ԽՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան: Տնտեսագիտ. դ–ր, պրոֆ. (1942): 1944–54-ին՝ ԽՍՀՄ ներկայացուցիչ ՄԱԿ-ի եվրոպ. տնտ. հանձնաժողովում, 1958–63-ին՝ ԽՍՀՄ դեսպան Կանադայում, 1963–70-ին՝ ԽՍՀՄ ԱԳՆ կենտր. աշխատակազմում: Մասնակցել է Թեհրանի (1943), Ղրիմի (1945), Պոտսդամի (1945) խորհրդաժողովներին:

Լենինի, Աշխ. կարմիր դրոշի (2), «Պատվո նշան» շքանշաններ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Համլետ Հարությունի (ծ. 1945), համակարգչ. և տեղեկագիտ. բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1981): 1992–2001-ին՝ ՀՀ ԳԱԱ Հաշվող. տեխնիկայի և տեղեկագիտ-յան ինստ-ի տնօրեն, 2001-ից՝ «ԱրմենՏել»-ի տեղեկատվ. համակարգերի գլխ. տնօրեն: Աշխ-ները վերաբերում են բարձր հուսալիության հաշվող. համալիրների ճարտարագիտ-յանը, ծրագրային ապահովմանը, հատուկ նշանակության ինքնաշխատ կառավարման համակարգերին և տեղեկագիտ. տեխնոլոգիաներին:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Համլետ Մալխասի (ծ. 1948), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1991), պրոֆ. (2006): Աշխ-ները վերաբերում են ՀԽՍՀ սոցիալ-տնտ., հաս-քաղ. և սոցիալ-դասակարգ. հիմնահարցերին, նաև ՀՀ (1918–20) և Լեռնային Ղարաբաղի (1918–21) պատմությանը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Համո (Հմայակ) Ավետիսի (1906–1981), պատմաբան: Պատմ. գիտ. թեկնածու (1939), պրոֆ. (1966): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1954): Աշխ-ները վերաբերում են Արշակունյաց թագավորությանը, V դ-ի հայ ազատագր. շարժումներին, արաբ. խալիֆության տիրապետությանը, Բագրատունյաց թագավորությանը ևն:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հարություն Ավետիսի (ծ. 1948), նկարիչ: Գեղանկարչ. («Սպասում», 1978, «Սարոյանը Էջմիածնում», 1981, «Գարնանային մեղեդի», 2011, «Անկյուն իմ այգում», «Զրվեժ», երկուսն էլ՝ 2013, ևն) և կրոն. թեմաներով («Տիրամայր», 2001, «Ավետում», 2013, «Նոյյան տապան», 2007, ևն) գործերին բնորոշ է մեղմահնչուն գույների ու գծակառույցի արտահայտիչ ներդաշնակությունը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հենրիկ Մարգարի (1931–2008), ֆիզիկոս-տեսաբան: Ֆիզ-մաթ. գիտ. դ-ր (1970): Գագիկ և Վիլիկ *Հարությունյանների* եղբայրը: Աշխ-ները վերաբերում են ֆիզ. հիդրոդինամիկային, անհամասեռ միջավայրում պայթյունային ալիքների տարածման տեսությանը, հարված. ալիքների անդրադարձման և փոխազդեցության ֆիզիկիային ու մեխանիկային:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հմայակ Ավագի (1897–1962), քիթկոկորդականջաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1939), պրոֆ. (1940): Աշխ-ները վերաբերում են վերին շնչուղիների, քթի, կերակրափողի ֆիզիոլոգիայի, ախտաբանության և բուժման հարցերին: 1939-ին Հ. ԵԲԻ-ում կազմակերպել է քիթկոկորդականջաբանության ամբիոն: Հ-ի անունով է կոչվել ԵՊԲՀ քիթկոկորդականջաբանության կլինիկան:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հովհաննես Կառլենի (ծ. 1966), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (2008), պրոֆ. (2011): Աշխ-ները վերաբերում են հանրային կառավարման խնդիրներին:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հովհաննես Սուրենի (ծ. 1950), նկարիչ: Հեղինակ է բնանկարների, դիմանկարների, կոմպոզիցիաների («Սևան», «Արարատ» շարքերը՝ 1970-ից, «Ժանետայի դիմանկարը», 2000, «1915 թ.: Ապրիլի 24», 1998, ևն), աստվածաշնչ. և եկեղեցածիս. թեմաներով գործերի («Քրիստոսի մուտքը Երուսաղեմ», «Ս. Սարգիս», երկուսն էլ՝ 2003, Պյատիգորսկի Սբ Սարգիս եկեղեցում):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հրաչյա Կամսարի (ծ. 1961), դերասան, ռեժ.: ՀՀ վաստ. արտիստ (2006): Սյուզաննա *Մարգարյանի* ամուսինը: 1978-ից՝ ԵԴԹ-ի դերասան (Ռոմեո, Մարկոս Անտոնիոս, Համլետ՝ Վ. Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ», «Հուլիոս Կեսար», «Համլետ», Հիսուս Նազովրեցի՝ Պ. Զեյթունցյանի «Հիսուս Նազովրեցին և իր երկրորդ աշակերտը», ևն): Խաղացել է հեռուստաթատրոնում:

ՀՀ Պետ. (2012), ՀԹԳՄ «Արտավազդ» (2012) մրց-ներ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հուսիկ Սուրենի (1945–2006), ԽՍՀՄ անվտանգության գեն-մայոր (1989): 1979–88-ին աշխատել է ՀԽՍՀ ՊԱԿ-ում, 1988–90-ին՝ ՀԽՍՀ ՆԳ նախարար, 1990–92-ին՝ ՀՀ ՊԱԿ-ի նախագահ, 1992–93-ին՝ ՀՀ Հարկային պետ. տեսչության պետ: ՌԲՆԳԱ անդամ (1998): Զոհվել է ավիավթարից:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Սանուկ Արսենի (ծ. 1946), փիլ.: Փիլ. գիտ. դ-ր (2015): Աշխ-ներ վերաբերում են սոցիալ. և իրավունքի փիլ-յան հարցերին:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մարգարիտ Գաբրիելի (1921–1997), երաժշտագետ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1965): ԵՊԿ պրոֆ. (1981): Հեղինակ է «Կոմիտաս» (1969), «Հայ երաժշտության պատմություն» (Անդ-նա *Բարսամյանի* հետ, 1996) աշխ-ների, կազմել է «Ա. Խաչատրյան. նամակներ» (1995), «Հայկանուշ Դանիելյան» (ռուս., 1988) ժող-ները:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մարիամ Եվգենիի (ծ. 1962), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (2005), պրոֆ. (2008): Եվգենի *Հարությունյանի* դուստրը: Աշխ-ները վերաբերում են տեղեկատվության տեսությանը և ծածկագրաբանությանը, մասնավորապես՝ բազմաչափ. և փոփոխվող ընդհատուն կապուղիների տեղեկատվ. տես. հետազոտություններին:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մարիաննա Հարությունի (1923–2012), դաշնակահարուհի, երգչուհի: Հայկանուշ *Դանիելյանի* դուստրը, Միքայել *Խաչատրյանի* կինը: ՀՀ վաստ. արտիստ (1967): ԵՊԿ պրոֆ. (1985): 1948-ից՝ կոնցերտմայստեր, 1952–59-ին՝ ԵՕԲԹ-ի մեներգչուհի (Անուշ՝ Ա. Տիգրանյանի «Անուշ», Ռոզինա՝ Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», ևն):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Միխայիլ Հարությունի (ծ. 1946), ՀՀ բանակի գեն-գնդ. (2002): 1992–94-ին՝ ՀՀ ԶՈՒ ԳԾ օպերատիվ վարչության պետ, ԳԾ պետի 1-ին տեղակալ: 1994–2007-ին՝ ՀՀ ԶՈՒ ԳԾ պետ, պաշտպ-յան նախարարի 1-ին տեղակալ, 2007–08-ին՝ ՀՀ պաշտպ-յան նախարար, 2008-ից՝ ՀՀ նախագահի խորհրդական-գլխ. ռազմ. տեսուչ:

ՀՀ և ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի, ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի (2016), «Վարդան Մամիկոնյան», ԼՂՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց», ՀԱԵ «Սբ Ներսես Շնորհալի» շքանշաններ, ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի, «Անբասիր ծառայության համար» 1-ին և 2-րդ աստիճանի և այլ գերատեսչ. մեդալներ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Միխայիլ Նիկոլայի (1906–1995), խորհրդ. բանակի գեն-մայոր (1958): ՀՄՊ-ի ժամանակ կռվել է Կերչի և Վորոնեժի ռազմաճակատներում, 1944-ի սկզբին նշանակվել է Երևանի կայազորի 261-րդ հրաձգ. դիվիզիայի գնդի հրամ.: Ծառայել է Թամանյան դիվիզիայում, 1954–62-ին՝ Անդրկովկաս. ՋՕ հրաձգ. դիվիզիայի հրամ.:

Լենինի, ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի, Կարմիր աստղի, ՀՄՊ 1-ին աստիճանի (1985) շքանշաններ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Միհրան Էդիկի (ծ. 1989), ըմբիշ (հունահռոմ. ոճ): ՌԴ միջազգ. կարգի ս. վ.: Օլիմպ. խաղերի (2016) արծաթե մեդալակիր: Ռուսաստանի (2012, փոխչեմպիոն՝ 2011), Հայաստանի (2013) չեմպիոն, Եվրոպ. խաղերի արծաթե մեդալակիր (2015): Եվրոպայի պատանեկան առաջնության (2006) հաղթող, աշխարհի պատանեկան առաջնությունների (2008, 2009) մրցանակակիր:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Միքայել Արտեմի (1918–1987), բանաստեղծ: Արտեմ *Հարությունյանի* հայրը: 1972–83-ին՝ Հայկ. հանրագիտարանի խմբագրության գիտ. խմբ.: Հեղինակ է «Ալեկոծված հույզեր» (1942), «Պատիվ» (1958), «Հավատամք» (1977), «Մինչև այստեղ» (1985) խոհաքնար. բանաստեղծությունների ժող-ներ, նաև մանկ. պիեսների:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մհեր Ալեքսանդրի (ծ. 1972), խմբ., մատենագետ, պատմաբան: Պատմ. գիտ. թեկնածու (2001): 2012-ից՝ Ստեփանակերտի *«Մարտիկ»* թերթի գլխ. խմբ-ի տեղակալ, 2006-ից՝ «Կաճառ» գիտ. կենտրոն ՀԿ-ի հիմնադիր և *«Կաճառ»* տարեգրքի գլխ. խմբ.: Հեղինակ է «Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը» (2000), «Ասկերան. հերոսության հասցեներ» (2005) և այլ աշխ-ների, «Արցախի պարբերական մամուլի պատմությունից: Արցախի պարբերական մամուլի մատենագիտություն (1874–2009 թթ.)» (2010), «Լրագրողական հանրագիտակ: Կենսամատենագիտական տեղեկատու» (2012) մատենագիտ. աշխ-ների ևն:

ԼՂՀ Եղիշեի անվ. գր. Պետ. մրց. (2004):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մուշեղ (Միքայել) Աղաթելի (1898–1944), գվարդիայի եֆրեյտոր: ԽՄ հերոս (1944): Հերոսի կոչման արժանացել է Արմ. Դվինան գետանցելու, ձախ ափին հենակետ գրավելու և այն պաշտպանելու, մարտերում ցուցաբերած խիզախության համար: Այդ մարտում ծանր վիրավորվել է ու մահացել: Լենինի, ՀՄՊ-ի 2-րդ աստիճանի շքանշաններ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Յուրի Անուշավանի (ծ. 1957), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (2001), պրոֆ. (2001): Որովայնադիտման եղանակով ՀՀ-ում առաջինն է կատարել հաստ աղիի և մակերիկամի ուռուցքների, երիկամի բշտուռուցքի, նաև լյարդի և թոքի էխինոկոկի հեռացման վիրահատություններ:

ՀՀ «Մխիթար Հերացի» մեդալ (2012): Տարվա լավագույն վիրաբույժ (2012):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Յուրի Արշակի (ծ. 1944), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2012): 1967-ից՝ Հայֆիլմի կոմպոզիտոր-ձևավորող, երաժշտ. գլխ. խմբ., 1997-ից՝ ՀԿՄ «Բրևիս» ձայնագրման կենտրոնի ղեկ.: Հեղինակ է սիմֆոնիայի (1984), «Արաբեսկներ» սիմֆ. պատկերների, «Գովք խաղողին, գինուն և գեղեցիկ դպրության» (1970) կանտատի, Գալարափողի կոնցերտի (2000), լար. կվարտետների (1968, 1970), վոկալ շարքերի, թատրոնի ու կինոյի երաժշտության ևն:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Յուրի Վարդանի (1929–2016), սոցիոլոգ-ազգագրագետ: Պատմ. գիտ. դ-ր (1964), պրոֆ. (1971): ՌԳԱ թղթ. (1991), ՀՀ ԳԱԱ արտ. (2008) անդամ: Աշխ-ները վերաբերում են ՌԴ

տարածքում բնակվող ռուս և այլ ժողովների գյուղ. ու քաղաք. բնակչության սոցիոլոգիայի, սոցիալ. շարժունակության, պատմասոցիոլոգիայի ու ժամանակակից հաս-յան էթնոսոցիոլոգիայի հարցերին: Պատմասոցիոլոգ. և էթնոսոցիոլոգ. գիտ. ուղղությունների հիմնադիրն է:

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1986):

ՀԱՐՈՒԽՅՈՒՆՅԱՆ Յուրիկ Արշավիրի (ծ. 1950), նկարիչ: Հեղինակ է «Խաչելություն» (1980), «Առաջին գութան» (1983), «Լույսն Արարատից» (1987), «Եղեռն» (1990), «Էմանուել» (1991), «Անվերնագիր» (1993) և այլ գործերի:

ՀԱՐՈՒԽՅՈՒՆՅԱՆ Նագուշ Խաչատուրի (1912–1993), մեխանիկոս, պետ-քաղ. գործիչ: Ժամանակակից մեխանիկայի հայկ. գիտ. դպրոցի հիմնադիրներից: Տեխ. գիտ. դ-ր (1950), պրոֆ. (1950): ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1950): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): 1962–75-ին՝ ՀԽՍՀ ԳԽ նախագահության նախագահ, 1961–62-ին՝ ԵՊՀ ռեկտոր: Աշխ-ները վերաբերում են առաձգ. մարմինների ոլորման և հպում. խնդիրներին, բարակապատ տարրերից առաձգ. մարմինների ուժի փոխանցման հպում. խնդիրների տեսությանը: Մշակել է ծերացող նյութերի մաթ. տեսությունը (***Սապով–Հարությունյանի տեսություն***):

Լենինի, Հոկտ. հեղ-յան, ՀՄՊ 1-ին և 2-րդ աստիճանի, Կարմիր աստղի, Աշխ. կարմիր դրոշի շքանշաններ:

ՀԱՐՈՒԽՅՈՒՆՅԱՆ Նազիկ Կարապետի (ծ. 1956), մանկավարժ, խմբ.: Մանկավարժ. գիտ. դ-ր (2002), պրոֆ. (2006): 1996-ից՝ ԵՊՀ մանկավարժության ամբիոնի վարիչ, 2000-ից՝ «***Մանկավարժական միտք***» հանդեսի հիմնադիր-խմբ.: Հեղինակ է «Առաքել Բահաթրյան» (1992), «Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները» (2002), համահեղ.՝ «Հայ մանկավարժ կաթողիկոսները» (2012), «Հայ մանկավարժական հանրագիտարան» (հ. Ա, Բ, 2006, 2010) աշխ-ների:

ՀԱՐՈՒԽՅՈՒՆՅԱՆ Նարինե Լևոնի (ծ. 1971), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ-ր (2010), պրոֆ. (2016): Աշխ-ները վերաբերում են միջմշակութ. հաղորդակցության, լեզվամշակութաբանության հարցերին:

ՀԱՐՈՒԽՅՈՒՆՅԱՆ Նիկոլայ Վասիլի (1920–2014), պատմաբան, ուրարտագետ: Պատմ. գիտ. դ-ր (1969), պրոֆ. (1990): Աշխ-ները վերաբերում են Ուրարտուի ռազմաքաղ. պատմությանը, տեղանվանագիտ-յանը, երկրագործությանն ու անասնապահությանը, նորահայտ սեպագիր աղբյուրների ուսումնասիրությանը, մշակույթին:

ՀԱՐՈՒԽՅՈՒՆՅԱՆ Շմավոն Ռուբենի (1913–1993), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր, պրոֆ. (1965): Աշխ-ները վերաբերում են պատմագիտ-յան պատմության հարցերին («Հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակագրություն. 1801–1917», 1955, ևն):

ՀԱՐՈՒԽՅՈՒՆՅԱՆ Պյոտր Իվանի (1919–1992), անասնաբույժ-անատոմ: Անասնաբուժ. գիտ. դ-ր (1970), պրոֆ. (1972): Աշխ-ները վերաբերում են ՀՀ-ում բուծվող խեչ-ների և ընտանի թռչունների ցեղ., տիպ., հասակ., ինչպես նաև համեմատ. անատոմիայի խնդիրներին:

ՀԱՐՈՒԽՅՈՒՆՅԱՆ Ռաֆայել Հարությունի (1926–1989), ֆիզիոլոգ, ճառագայթակենսաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1966), պրոֆ. (1976): Աշխ-ները վերաբերում են օրգանիզմի արյունաստեղծման գործընթացների նյարդահումորալ կարգավորման և ներծին խթանիչների ֆունկցիոնալ նշանակության հարցերին: Համահեղինակ է ռուս-հայերեն ֆիզիոլոգ. (1977) և ռուս-հայերեն ֆիզիոլոգ. բացատր. (1979) բառարանների:

ՀԱՐՈՒԽՅՈՒՆՅԱՆ Ռաֆիկ Աշոտի (ծ. 1930), նյարդաֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ-ր (1987): Աշխ-ները վերաբերում են մարդու և գղտ. կենդանիների ջերմակարգավորման մեխանիզմներում սիմպաթիկ նյարդ. համակարգի տարբեր բաժինների և նյարդապեպտիդների դերին:

ԱՄՆ կենսագր. ինստ-ի «Տարվա մարդ» (1997), ՀՀ ԿԳՆ ոսկե մեդալ (2004):

ՀԱՐՈՒԽՅՈՒՆՅԱՆ Ռոբերտ Վազգենի (ծ. 1951), դերասան: ՀՀ վաստ. արտիստ (2007): 1983-ից՝ ԵԴԹ-ի դերասան (Դերասան, Դունկան՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», «Մակբեթ», Անխելք՝ Ս. Ստրատիևի «Ավտոբուս», Կուֆիսել՝ Մ. Սովաժոնի «Չաո», Մանուկ աղա՝ ըստ Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ»-ի, նաև ռեժ. կոմպոզիցիայի բեմականացում, ևն): Խաղացել է հեռուստաթատրոնում, նկարահանվել «Մենավոր ընկուզենի», «Ավտոբուս», «Անավարտ ղարաբաղյան օրագիր», «Լռության սիմֆոնիա», «Հովիվը» և այլ ֆիլմերում: ՀԹԳՄ ոսկե (2011), ՀՀ ՄՆ (2011) մեդալներ:

ՀԱՐՈՒԽՅՈՒՆՅԱՆ Ռոմիկ Սուրենի (ծ. 1945), քիմիկոս: Քիմ. գիտ. դ-ր (1996), պրոֆ. (2007): Աշխ-ները վերաբերում են էմուլսիաներում օքսիդացման և պոլիմերման շարժընթացների կինետիկ. օրինաչափություններին ու մեխանիզմին, ինչպես նաև ՄԱՆ-երի լուծույթների կոլոիդաքիմ. հատկություններին և քիմ. ռեակցիաներում դրանց նշանակությանը:

ՀԱՐՈՒԽՅՈՒՆՅԱՆ Ռուբեն Միքայելի (ծ. 1946), գենետիկ: Կենսբ. գիտ. դ-ր (1991), պրոֆ. (1990): ՀՀ ԲԳԱ ակադ. (1997), ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006): Բնական գիտ-ների բաժանմունքի ակադ. քարտուղար (2016-ից): Աշխ-ները վերաբերում են մարդու բջիջներում քիմ. և ճառագայթ. մուտածնության և հակամուտածնության հարցերին: Նախաձեռնել է Հայաստանում հայերի մարդաբանության, էկոլոգ. և թունաբան. գենետիկայի, մոլ. բջջագենետիկայի ուսումնասիրությունները: ՀՀ գենետիկների և ընտրասերումնաբանների միության նախագահ (1982–1990):

ՀԱՐՈՒԽՅՈՒՆՅԱՆ Սաղաթել Մամիկոնի (1921–2005), գրող, թարգմանիչ, խմբ.: ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1968): 1956–69-ին՝ «Պիոներ» (այժմ՝ «***Աղբյուր***»), 1969–78-ին՝ «***Գրական թերթ***» պարբ-ների գլխ. խմբ.: Հեղինակ է «Ապրիլ» (1952), «Արև ու ծով» (1964), «Առաջին ձյուն» (1987) և այլ բանաստեղծությունների, «Հարյուրերորդ հիերոգլիֆը» (1955), «Սարյան, Սարոյան, Փարաջանով և ուրիշներ...» (2004) պատմվածքների, «Թևեր» (1982) վիպակների ժող-ների, «Դատավորը» (1976), «Աղջիկը, Ծիպլինն և Տիմբական» (բեմ.՝ 1979), «Երկուսը աշնան ցրտում և այլ պիեսներ» (2004, ժող.) պիեսների, «Ծիպլինն, Տիմբական և ծիծաղը» (1985) հեքիաթ-վիպակի: Թարգմանել է Վ. Վ. Մայակովսկու, Զ. Ռոդարիի և ուր. գործերից:

ՀԳՄ Ս. Զորյանի անվ. մրց. (1981), ԽՍՀՄ Կարմիր աստղի, «Ժողովուրդների բարեկամության», ՀՄՊ 1-ին աստիճանի, «Պատվո նշան» շքանշաններ:

ՀԱՐՈՒԽՅՈՒՆՅԱՆ Սամսոն (1869–1941), հաս. գործիչ: Ընտրվել է Կովկասի հայոց բարեգործ. ընկ-յան (1915–17-ին՝ ընկ-յան «***Համբաւարեր***» շաբաթաթերթի խմբ.), Ազգ. բյուրոյի նախագահ, ՀԱԿ խորհրդի անդամ: 1914–15-ին մասնակցել է հայկ. կամավոր. ջոկատների կազմավորմանը: Անդրկովկասում խորհրդ. իշխանություն հաստատվելուց հետո՝ վտարանդի:

ՀԱՐՈՒԽՅՈՒՆՅԱՆ Սամվել Գառնիկի (ծ. 1955), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1993), պրոֆ. (1994): ԵՊՀ պրոռեկտոր (2006–07), 2007-ից՝ ՀՀ ԿԳՆ գիտ-յան պետկոմի նախագահ: Աշխ-ները վերաբերում են նուկլեինաթթուների հետ կենսբ. ակտիվ նյութերի առաջացրած կոմպլեքսներին:

ՌԴԱՄ Ա. Մ. Պրոխորովի անվ. մրց. (2009), Ս. Պ. Կորոլյովի անվ. (2009), ԵՊՀ (2009), ՀՀ ԿԳՆ (2010) ոսկե մեդալներ:

ՀԱՐՈՒԽՅՈՒՆՅԱՆ Սաշա Լևոնի (ծ. 1950), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (2009): Աշխ-ները վերաբերում են կիսահաղորդչային նանոկառուցվածքների գծային և ոչ գծային օպտիկ. հատկությունների տես. ուսումնասիրություններին:

ՀԱՐՈՒԽՅՈՒՆՅԱՆ Սարգիս Բարդուղիմեոսի (ծ. 1928), բանասեր, հնագետ-ազգագրագետ, խմբ.: Բանասիր. գիտ. դ-ր (1971), ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2000): ՀՀ գիտ-յան վաստ. գործիչ (2009): 2006-ից՝ «***Պատմաբանասիրական հանդես***»-ի գլխ. խմբ.: Հեղինակ է «Հայ ժողովրդական հանելուկներ» (1960), «Մանուկ Աբեղյան» (1970), «Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ» (1975), «Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ» (2006) մենագրությունների, «Հայ հին վիպաշխարհը» (1987), «Հայ առասպելաբանություն» (2000), «Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը» (2001), «Բանագիտական ակնարկներ» (2010) աշխ-ների: Գրառել է և հրատարակել հայկ. էպոսի նոր պատումներ («Մասնա ծռեր», հ. 3, 1979, հ. 4, 1999, Ա. Սահակյանի հետ), «Սասունցի Դավիթ» (1981) համահավաք բնագիրը:

Համազգ. կրթամշակութ. հաստատության մրց. (1994, Լիբանան), ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2013):

ՀԱՐՈՒԽՅՈՒՆՅԱՆ Սեթ Գրիգորի (1862–1936), բանասեր, մանկավարժ: Զբաղվել է հայ քնն-բաղդատ. բնագրագիտ-յամբ, Մանուկ ***Աբեղյանի*** հետ հրատարակել (1913) Մովսես Խորենացու «Հայոց պատմության» քնն. տեքստը:

ՀԱՐՈՒԽՅՈՒՆՅԱՆ Սլավիկ Սամսոնի (ծ. 1944), կենսաքիմիկոս: Գղտ. գիտ. դ-ր (2002), պրոֆ. (2012): Աշխ-ները վերաբերում են խաղողի և պտղատու տնկարկներում հանք. պարարտանյութերի, հիմն. սննդատարրերի շրջապտույտի, բույսերում կենսաքիմ. փոխակերպման մեխանիզմներին:

ՀԱՐՈՒԽՅՈՒՆՅԱՆ Սուսաննա Գևորգի (ծ. 1961), կինոգետ, լրագրող: «Հայկական կինո. 1924–1999 լիակատար կատալոգ»-ի պատ. խմբ-ը, «Ոսկե ծիրան» (Երևան) միջազգ. կփ-ի հիմնադիրներից և գեղ. տնօրենը: 2003-ից՝ Հայաստանի ներկայացուցիչը եվրոպ. մշակութ. խորհրդրանում, միջազգ. կփ-երի (Բեռլին, Ռիգա, Վիեննա, Կառլովի Վարի ևն) ժյուրիի անդամ:

ՀԱՐՈՒԽՅՈՒՆՅԱՆ Սուրեն Գուրգենի (ծ. 1939), կուս., պետ. գործիչ: SS (միջազգ.

հարաբերություններ) բնագավառի դ-ր (1998): 1986–88-ին՝ ՀԽՍՀ ՆԽ նախագահի 1-ին տեղակալ: 1988–90-ին՝ ՀԿԿ ԿԿ 1-ին քարտուղար: 1999–2006-ին՝ ՀՀ դեսպան Բելառուսում և ՀՀ ներկայացուցիչ ԱՊՀ կանոնադր. և այլ մարմիններում: ՌԴ դիվանագիտ. հիմնահարցերի և միջազգ. հարաբերությունների ակադ-ի անդամ (1991-ից): ԽՍՀՄ ժող. պատգմ. (1989–91):

ԽՍՀՄ «Պատվո նշան» (2) շքանշան:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Սուրեն Գուրգենի (ծ. 1953), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1995): Աշխ-ները վերաբերում են արագացուցչային ֆիզիկային և տեխնիկային, տարր. մասնիկների փնջերի արատորոշմանը և սինքրոտրոն. ճառագայթմանը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Սուրեն Սողոմոնի (1909–1989), գրականագետ, թատերագետ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1960): Հեղինակ է մենագրությունների, նաև «Ստանիսլավսկու սիստեմը և հայ թատրոնը» (1964), «Սովետահայ թատրոն» (1968), «Թատերարվեստի ավանդույթներով» (1985) և այլ գրքերի:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վահան Նազարեթի (1918–1990), արվեստաբան: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1985): Պրոֆ. (1987): Հեղինակ է «Վարդգես Սուրենյանց» (1960), «Արձանագործ Տիգրան Դավթյան» (1968), «Հայկական ՍՍՀ կերպարվեստը» (հայ., ռուս., անգլ., 1972), «Արա Սարգսյան» (1975), «Գառզու» (1987) և այլ աշխ-ների:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վաղարշակ Վառնազի (ծ. 1956), ՀՀ բանակի գեն-լեյտ. (1996): Վյաչեսլավ *Հարությունյանի* եղբայրը: 1991–92-ին՝ ՀՀ ՆԳ նախարարի տեղակալ, 1994–99-ին՝ ԱՊՀ մասնակից երկրների ռազմ. համագործակցության համակարգման շտաբում (1996–99-ին՝ պետի տեղակալ՝ ՀՀ ԶՈՒ ներկայացուցիչ): 1999–2000-ին՝ ՀՀ պաշտպ-յան նախարար: «Ազգային վերածնունդ» կուս-յան նախագահ (2008-ից):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վաչագան Վիկտորի (ծ. 1954), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (2000), պրոֆ. (2016): Աշխ-ները վերաբերում են պինդ մարմնի ֆիզիկային, լազեր. բյուրեղներին, սինքրոտրոն. ճառագայթներին, ցեոլիտներին:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վարազդատ Մարտիրոսի (1909–2008), ճարտ-յան պատմաբան, տեսաբան: Ճարտ-յան դ-ր (1965), պրոֆ. (1965), ՀՀ ԳԱԱ ակադ. (1996): ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1961): 1962–64-ին՝ ՀՃՄ վարչության, 1977-ից՝ Հուշարձանների պահպանության ընկ-յան նախագահ: Համահեղինակ է «Հայկական ճարտարապետության հուշարձաններ» (1951), «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը» (1955, 1972), «Երևան» (1968), «Հայկական ճարտարապետության պատմության մի քանի հարցեր» (1969, բոլորը՝ ռուս.), «Հայաստանի հուշարձանները» (1975), «Մակարավանք» (իտալ., 1994), «Ճարտարապետական հուշարձանների վերականգնումը» (2003, ԹՄՄ Վ. Թեքեյանի անվ. մրց.՝ 2005), հեղինակ՝ «Հին աշխարհի ճարտարապետությունը» (1978), «Հայկական ճարտարապետության պատմություն» (1992) աշխ-ների:

ՀՀ ԳԱ Թ. Թորամանյանի անվ. մրց. (1978), ՀԱԵ «Սբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշան (1997), ՀՀ «Մանանիա Շիրակացի» (1994), ՀՀ ԳԱԱ Ա. Թամանյանի անվ. ոսկե (2002) մեդալներ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վերոնիկա Նիկոլայի (ծ. 1955), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ-ր (2008): Հեղինակ է «Ածական անունը անվանակարգության մեջ» (2006) մենագրության, «Ռուսաց լեզվի քերականության…» (2011) ուսումնասիրության, «Առավել գործածական քերականական եզրերի բառարանի» (2000):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վիլեն Միլիտոսի (1933–2006), թերապևտ: Բժշկ. գիտ. դ-ր (1974), պրոֆ. (1976): ՀՀ ԲԳԱ ակադ. (1977, փոխնախագահ): Աշխ-ները վերաբերում են ստամոքսաղիք. համակարգի, երիկամների, ներզատիչ գեղձերի, նյութափոխանակային հիվանդություններին, պարբեր. հիվանդությանը, արյան զարկերակ. ճնշման և էկոլոգիայի հարցերին: ՀՀ ԱՆ գլխ. թերապևտ (1987–97), ՀՀ թերապևտ-ինտերնիստների ընկերակցության նախագահ (1996):

ՌԳԱ Ի. Պ. Պավլովի (1998), Մ. Վ. Լոմոնոսովի (2000) ոսկե մեդալներ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վիլիկ Մարգարի (1936–2000), ֆիզիկոս-տեսաբան: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1972), պրոֆ. (1974): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (1981): ՀՀ բարձրագույն կրթության և գիտ-յան պետ. կոմիտեի նախագահ (1990–91): Գագիկ և Հենրիկ *Հարությունյանների* եղբայրը: Աշխ-ները վերաբերում են մաթ. ֆիզիկային, պոտենցիալային ցրման տեսությանը, գազերում ոչ գծային օպտիկ. երևույթներին, լազեր. ճառագայթման և էլեկտրոնների փոխազդեցությանը, օպտիկ. քվանտ. գեներատորների տեսությանը, ոչ գծային բևեռացման երևույթներին: Առաջարկել է լազերի նոր տիպ՝ քվազիալիքատար բարակ թաղանթ. լազեր:

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (1976), «Պատվո նշան» (1986) շքանշաններ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վիլիկ Սիրակի (1938–2015), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դ-ր (1988), պրոֆ. (1991): ԽՍՀՄ գյուտարար (1981, 1984): Աշխ-ները վերաբերում են տարացիկլիկ, այդ թվում՝ կենսաբանորեն ակտիվ միացությունների սինթեզի եղանակների մշակմանը: Նրա սինթեզած որոշ միացություններ ունեն կիրառ. նշանակություն:

Էկոլոգիայի միջազգ. ակադ-ի (1996), ՀՃՄ թղթ. (2003) անդամ: ԵՊՀ ոսկե մեդալ (2009):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վիրաբ Համայակի (1916–1998), դերասան: ՀՀ ժող. արտիստ (1985): 1936–42-ին՝ ԵՊՀԹ, 1945–91-ին՝ ԵՏԹ դերասան (Պիգմալիոն՝ «Ջքնաղ Գալատեա»՝ ըստ Բ. Շոուի, Վարժապետ՝ «Ծաղկի փողոց թիվ 2»՝ ըստ Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար»-ի, Արջ՝ «Արջն ու աղջիկը», ևն):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վլադիմիր Լիպարիտի (ծ. 1957), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (2004), պրոֆ. (2007): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2010): Տիգրան և Դավիթ *Հարությունյանների* հայրը: Տնտեսագիտ-յան ինստ-ի տնօրեն՝ 2006-ից: Աշխ-ները վերաբերում են ՀՀ-ում հարկաբյուջետ. քաղ-յան կատարելագործման, համայնքների սոցիալ-տնտ. զարգացման, արտահանման աճի և տնտ-յան մասնագիտացման, հարկ. համակարգի, համաշխ. ֆինանսատնտ. ճգնաժամի հիմնախնդիրներին:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2013):

Որդին՝ **Դավիթ Հ.** (ծ. 1985), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (2013): Աշխ-ները վերաբերում են վճարային հաշվեկշռի, հարկերի և հարկ. քաղ-յան խնդիրներին:

Որդին՝ **Տիգրան Հ.** (ծ. 1983), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (2016): Աշխ-ները վերաբերում են հարկ. քաղ-յան և վարչարարության կատարելագործման խնդիրներին:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վլադիմիր Հարությունի (1931–2000), գրող, լրագրող: 1989-ին հիմնադրել է «Հայաստանի Հանրապետության բնակավայրերը» մատենաշարը և տպագրել 7 գիրք: Հեղինակ է «Ատլանտիդա» (1965), «Վայոց ձոր» (հ. 1, 2, 1970, 1974), «Անմահության նախօրեին» (1987) և այլ վեպերի, «Բողոք լեռներում» (1962), «Նաիրյան աստվածներ» (1982) պատմվածքների ու վիպակների, «Սարդարապատ» (2006) բանաստեղծությունների ժող-ների:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վլադիմիր Միքայելի (ծ. 1940), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1979), պրոֆ. (1981): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1990-ից): ՀՀ ԳԱԱ «Տեղեկագիր. ֆիզիկա» ամսագրի գլխ. խմբ. (1992-ից): Կիսահաղորդչ. սարքերի և նանոտեխնոլոգիաների կենտրոնի գիտ. ղեկ. (2007-ից), ՀՃԱ, Նյու Յորքի ԳԱ ակադ., ՌԲՆԳԱ արտ., «Արարատ» միջազգ. ակադ-ի (Փարիզ) թղթ. անդամ: Ուսումնասիրել է անհավասարակշիռ երևույթները կիսահաղորդչ. սարքերում, կիսահաղորդչ. նյութերի ֆիզ. և էլեկտրաքիմ. հատկությունները:

ՀՀ նախագահի մրց. (2007), ՀՀ «Մանանիա Շիրակացի», ԿԳՆ ոսկե մեդալներ, վարչապետի հուշամեդալ (2009):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վյաչեսլավ Վառնազի (1948–2009), ՀՀ բանակի գեն-մայոր (1992): Վաղարշակ *Հարությունյանի* եղբայրը: Մասնակցել է Աֆղանստանում ռազմ. գործողություններին: 1987–91-ին ծառայել է ՀՀ պետանվտանգության մարմիններում: 1997–2001-ին՝ ՀՀ Կառ-յանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության պետ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Տիգրան Ներսեսի (ծ. 1949), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (2010), պրոֆ. (2013): Աշխ-ները վերաբերում են դիֆերենցիալ օպերատորների սպեկտր. տեսությանը: Ներմուծել է «օպերատորների ընտանիքի սեփ. արժեքների ֆունկցիա» հասկացությունը, ստացել նոր արդյունքներ սպեկտր. տեսության ուղիղ և հակադարձ խնդիրներում: Հայկ. մաթ. միության նախագահ (2011–17):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ֆաբլուխ Ռուբենի (1929–1981), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1974), պրոֆ. (1978): Հետազոտել է ռենտգեն. անցումային ճառագայթումը և մասնակցել դրա դետեկտորների ստեղծմանը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ֆելիքս Գևորգի (1940–2001), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1986), պրոֆ. (1987): Աշխ-ները վերաբերում են եռանկյունաչափ. և ընդհ. օրթոգոնալ շարքերի զուգամիտությանը, այդ շարքերով ֆունկցիաների ներկայացմանը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ֆիրդուսի Գրիշայի (ծ. 1947), այգեգործ: Գեղտ. գիտ. դ-ր (2005): Խաղողագործության և գինեգործության միջազգ. ակադ-ի անդամ (2006): Աշխ-ները վերաբերում են խաղողի վազի ագրոտեխ. միջոցառումների կատարելագործման հարցերին:

ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՎ (Հարությունյան) Ալեքսանդր Իվանի (1904–1975), նյարդավիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1944), պրոֆ. (1945): Ուկր. ԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1954): Սոց. աշխ. հերոս (1974): 1950-ին Կիևում հիմնադրել է նյարդավիրաբուժության ԳՀԻ: Աշխ–ները վերաբերում են նյարդ. համակարգի ուռուցքների, գլխուղեղի բորբոքումների կլինիկայի, ախտորոշման և վիրահատ. բուժման հարցերին:

Ուկր. ԽՍՀ ԱՆ գլխ. նյարդավիրաբույժ (1947–52), Նյարդավիրաբույժների համաշխ. դաշնության պատվ. նախագահ (1969–73):

ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՎ Ռաֆայել Նժդեհի (1928–2005), ճարտարագետ, «թրթռուրավոր մեքենաների» մասնագետ: Կրյուկովի (Ուկրաինա) վագոնաշին. գործարանի գլխ. ճարտարագետ (1957–60), տնօրեն (1960–66), ԽՍՀՄ ծանր և տրանսպորտ. մեքենաշինության փոխնախարար (1966–91): Մասնակցել է Չեռնոբիլի ԱԷԿ-ի վթարի հետևանքների վերացման աշխ–ներին:

ԽՍՀՄ Պետ. մրց., Լենինի, Հոկտ. հեղ–յան, Աշխ. կարմիր դրոշի (2), «Հանքափորի փառքի» 1-ին աստիճանի, «Պատվո նշան» շքանշաններ:

ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՎ Ռաֆայել Սեյրանի (ծ. 1934), ռազմ. գործիչ, խորհրդ. բանակի գեն–մայոր (1976): 1986–90-ին եղել է ԽՍՀՄ ՊՆ քաղ. պաշտպ–յան բարձրագույն սպայական դասընթացների պետ: Զորացրվել է 1991-ին:

ԽՍՀՄ Կարմիր աստղի շքանշան (2):

ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՎ (Հարությունյան) Սերգեյ Ալեքսանդրի (ծ. 1932), ազգագրագետ: Պատմ. գիտ. դ–ր (1970): ՌԳԱ թղթ. անդամ (1990): ՌԳԱ պատմության բաժանմունքի ակադ. քարտուղարի տեղակալ (1991–97): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (2008): 1957–ից աշխատում է ՌԳԱ ազգագրության և մարդաբանության ինստ–ում (Մոսկվա): Համահեղինակ է «Աթեիստական բառարանի» (1986): Մարդաբանների և ազգաբանների համառուսաստանյան միության 1-ին նախագահ (1990–94):

ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՎ Վալենտին Հովսեփի (1908–1976), չափիչ տեխնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1949), պրոֆ. (1950): 1944–46-ին՝ Լենինգրադի «Վիբրատոր» գործարանի գլխ. ճարտարագետ: Աշխատակիցների հետ մշակել և իրականացրել է էլեկտրամեխ. օսցիլոգրաֆների գործարան. արտադր–յունը: 1956–76-ին՝ Չափագիտ–յան համամիութ. ԳՀԻ տնօրեն: Աշխ–ները վերաբերում են չափման ընդհ., էլ. չափումների, էլեկտրաչափիչ սարքերի տեսություններին, հաշվարկի և նախագծման հարցերին:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1948), Լենինի (1967), Հոկտ. հեղ–յան (1971) շքանշաններ:

ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՎ Վլադիմիր Սերգեյի (ծ. 1946), քիմիկոս–ճարտարագետ: Տեխ. գիտ. դ–ր (1992), պրոֆ. (2004, Մոսկվայի նավթի և գազի ինստ.): Աշխ–ները վերաբերում են արագընթաց գործընթացների քիմ. ֆիզիկային, տրանսպորտի և էներգետիկայի էկոլոգիայի խնդիրներին: Ամերիկ. քիմ. ընկ–յան անդամ:

ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ Նինա Դավթի (ծ. 1923), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ–ր (1975), պրոֆ.: ՌԳԱ թղթ. անդամ (1990), ՀՀ ԳԱԱ պատվ. անդամ: «Լեզվագիտական հանրագիտական բառարանի» (1930) հեղինակ–խմբ.: Արդի լեզվաբ–յան մեջ նոր՝ լեզվի տրամաբ. վերլուծության ուղղության հիմնադիրը: Հեղինակ է «Մարդու լեզուն և աշխարհը» (1998), «Նախադասությունը և նրա իմաստը: Տրամաբանական–իմաստաբանական խնդիրներ» (2003) և այլ աշխ–ների: ՌԴ Պետ. մրց. (1995):

ՀԱՅՐԻԿԼԱՂԱԻԱԲՈՐԲ, **պարապորոտիտ** (< *պարա*… և հուն.՝ proktos – ուղիղ աղի), ուղիղ աղին շրջապատող բջջանքի բորբոք. հիվանդություն: Թարախակույտի առաջացման դեպքում՝ վիրահատություն (թարախակույտն ինքնուրույն բացվելիս առաջանում է խուղակ):

ՀԱՅՐՈՒՆ ԱԼ–ՌԱՇԻԴ (763/766–809), արաբ խալիֆ՝ 786–ից՝ Աբբասյանների հարստությունից: Շարունակել է Բյուզանդիայի դեմ պայքարը, ասպատակել Փոքր Ասիան: Նրա կերպարն արտացոլվել է «Հազար ու մեկ գիշեր» հեքիաթների և գրույցների ժող–ում:

ՀԱՅՔ, գվո Մեծ Հայքի Տուրուբերան նահանգում՝ Արածանի գետի վերին հովտում՝ Տարոն, Վարաժնունիք, Ապահունիք, Խորխոռունիք և Բզնունիք գվո–ների միջև: Մար Աբաս Կատինան (ըստ Մովսես Խորենացու) Հ. և նրա հայկաշեն դաստակերտը համարել է Հայկ նահապետի բնակության սկզբնատեղին: Այժմ բաժանված է թուրք. Բուլանըխ և Մանազկերտ գվո–ների միջև:

ՀԱՅԱԲԶԵԶՆԵՐ (Anisoplia), թերթաբեղիկավորների ընտանիքի բզեզների ցեղ: Հասկավոր հացազգիների վնասատուներ: Հայտնի է ավելի քան 50 տեսակ՝ Եվրասիայում: Առավել վտանգավոր են կուզկան, դաշտ. մայիսյան բզեզը (տարածված է նաև ՀՀ–ում): Սարմինը (երկ.՝ 8–12 *մմ*) սև է՝ կանաչաերրոնզագույն փայլով, վերնաթևերը՝ դարչնագույն–դեղին: Թրթուրների երկ.՝ մինչև 22 *մմ*: Բզեզները սնվում են աշնանացան և գարնանացան ցորենի, աշորայի, գարու չհասունացած լցվող հատիկով: Թրթուրները վնասում են հացազգի մշակաբույսերի, ճակնդեղի և այլ բույսերի արմատ. համակարգն ու ստորգետնյա մասերը:

ՀԱՅԱԳՈՐԾՅԱՆ Զավեն Արսենի (1911–1992), ճարտարագետ–շինարար: Տեխ. գիտ. դ–ր (1966), պրոֆ. (1968): Կարեն *Հացագործյանի* հայրը: Աշխ–ները վերաբերում են բնական ծակոտկեն լցիչների կիրառմամբ թեթև երկաթբետոնի հետազոտման, արհեստ. մարմարի և գրանիտի ստացման տեխնոլոգիայի հարցերին: Մասնակցել է քարե շինանյութերի պետ. չափորոշիչների մշակմանը: Համահեղինակ է «Ռուս–հայերեն պոլիտեխնիկական բառարանի» (1988):

ՀԱՅԱԳՈՐԾՅԱՆ Կարեն Զավենի (ծ. 1956), ֆիզիկոս–տեսաբան: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (2000), պրոֆ. (2014): Զավեն *Հացագործյանի* որդին: Աշխ–ները վերաբերում են ուժեղ լազեր. ճառագայթման հետ ազատ էլեկտրոնների փոխազդեցության, ուժեղ դաշտերում հարկադիր արգելակ. ճառագայթման, ձայն. դաշտում պլազմայի ոչ գծային երևույթների, ուժեղ դաշտերի ատոմ. ֆիզիկայի խնդիրներին:

ՀԱՅԱԳՈՐԾՅԱՆ Հասմիկ Գաբրիելի (ծ. 1957), երգչուհի (սոպրանո): ՀՀ վաստ. արտիստ (2003): 1983–ից՝ ԵՕԹԹ–ի մենակատարուհի (Դեզդեմոնա, Վիոլետտա՝ Ջ. Վերդիի «Օթելլո», «Տրավիատա», Տոսկա, Միմի՝ Ջ. Պուչչինիի «Տոսկա», «Բոհեմ», Պաոլինա՝ Գ. Դոնիցետտիի «Պողիկտոս», Անուշ՝ Ա. Տիգրանյանի «Անուշ», Փառանձեմ՝ Տ. Չուխաճյանի «Արշակ Բ», ևն):

Մենակատարների միջազգ. մրցույթների՝ Մեծ (1989, Բրազիլիա), 2–րդ (1990, Իտալիա), Վ. Բելլինիի անվ. (1990), Լ. Տոդիի անվ. (1991, Պորտուգալիա) մրց–ներ:

ՀԱՅԱԳՈՐԾՅԱՆ Վահան Սարգսի (1880–1967), արծաթագործ: ՀԽՍՀ վաստ. նկարիչ (1963): 1915-ին ներգաղթել է: «Վան» արծաթագործ. միավորման հիմնադիրներից: Հեղինակ է մանրարուրք տեխնիկայով ստեղծված բարձրարվ. գործերի («Մրգաման», 1948, «Կռնյակի սպասք», 1949, «Հորելյանական», 1951, սկահակ, «Առատություն», 1953, կարաս, ևն):

ՀԱՅԱԶԳԻՆԵՐԻ ԼՎԻՃՆԵՐ, լվիճների ընտանիքի ծծող միջատներ, դաշտավլուկազգիների ընտանիքի մշակաբույսերի վնասատուներ: Հասուն միջատները (երկ.՝ 2,4–3,0 *մմ*) կանաչավուն են: Առավել վնասակար են սովոր. մեծ, գարու, թխենու լվիճները, որոնք ծծում են բույսի դալար մասերի հյութերը, իսկ վնասված մասերը դեղնում են, ոլորվում ու չորանում:

ՀԱՅԱԶԳԻՆԵՐԻ ՄՂՈՑՈՂՆԵՐ, թաղանթաթևավորների կարգի ցողուն. սղոցողների ընտանիքի միջատներ: Հացազգիների վնասատուներ են (հատկապես՝ սովոր. և սև սղոցողները)՝ Եվրոպայում: Մնվում են ցողունների ներսում: Պայքարի միջոցառումները՝ աշնանավար, գարնանացանի վաղ ցանք, սղոցողների թռիչքի ժամանակ՝ սրսկում միջատասպաններով:

ՀԱՅԱԾԱՌ (Artocarpus), **հացապտղի**, թթազգիների ընտանիքի ծառերի տեսակներ: Առավել նշանակություն ունեն սովոր. և հնդ. Հ–երը. մշակվում են արևադարձներում: Պտղաբույլը (զանգվածը՝ 3–4–ից 40 *կգ*) օգտագործում են սննդի մեջ:

ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐ, հատիկ. մշակաբույսերի կարևորագույն խումբ: Մշակում են հիմնականում հացահատիկ ստանալու համար: Հ. մ. են ցորենը, գարին, աշորան, վարսակը, կորեկը, բրինձը, եգիպտացորենը ևն: Հ. մ–ից ստացվող հատիկն ունի պարեն. և կեր. նշանակություն: Ցորենը մշակվում է բոլոր մայրցամաքներում, բրինձը՝ Ասիայում, եգիպտացորենը՝ Հս. Ամերիկայում, աշորան՝ Եվրոպայում: ՀՀ–ում մշակում են գրեթե բոլոր մարզերում:

ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ԱՄԲԱՐԱՅԻՆ ՑԵՑԵՐ, գոգաթև ցեցերի ընտանիքի թիթեռ: Հացահատիկամթերքների պաշարների և հացազգի մշակաբույսերի՝ ցորենի, գարու, աշորայի, եգիպտացորենի ևնի վնասատու: Հանդիպում է ամենուրեք՝ հացահատիկի պահեստներում (բացի բևեռ. մարզերից), հվ. շրջաններում՝ որպես դաշտերի վնասատու: Էգերը ձվադրում են հացահատիկի վրա, դաշտ. պայմաններում՝ ծաղկաթեփուկների հետևում: Թրթուրները մտնում են հատիկի մեջ և ուտում պարունակությունը:

ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ԲՎԻԿՆԵՐ, գիշեր. թիթեռների ընտանիք. ***հացահատիկային մշակաբույսերի*** վնասատուներ: Առավել վտանգավոր են հացահատիկի սովոր. և մոխրագույն բվիկները: Սովոր. բվիկները վնասում են ցորենը, աշորան, հազվադեպ՝ եգիպտացորենը, մոխրագույնը՝ գարնանացան ցորենը: Թիթեռները ձվադրում են հասկերի մեջ (սովոր. բվիկները՝ նաև քիստերի և գագաթ. տերևների վրա): Թրթուրներն սկզբում խոռոչ են բացում հատիկի մեջ, ապա հատիկն ուտում են

արտաքինից, բերքահավաքից հետո սնվում են թափված հատիկներով, տերևներով և մոլախոտ. հատիկաբույսերով:

ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ԳՆԱՅՈՒԿ ԲԶԵԶ, գնայուկ բզեզների ընտանիքի միջատ: Աշնանացան ցորենի, գարու և աշորայի վտանգավոր վնասատու է: Տարածված է Եվրոպայում՝ ոչ սևահող., տափաստան. և անտառատափաստան. գոտիներում: Մարմինը (երկ.՝ 14–16 *մմ*) ուռուցիկ է, լայն, սև կամ մուգ դարչնագույն: Ձմեռում են թրթուրները, որոնք գարնանը տեղափոխվում են հողի վերին շերտ և սնվում հացաբույսերով: Նոր բզեզները դուրս են գալիս հողի երես և սնվում հատիկներով, ապա ձվադրում հողի վերին շերտում: Ձվերից դուրս եկած թրթուրները սնվում են աշնանացանի ծիլերով: Գիշերները բզեզները սնվում են հատիկներով, ցերեկները՝ բուս. մնացորդներով:

ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ՄԼՈՒԿՆԵՐ, փայտամլուկների ընտանիքի միջատների խումբ: Հասկավոր հացազգիների վնասատուներ են: Առավել վնասակար են կրիայիկը, ավստր., մավրական և Aelia ցեղի սրագլուխ մլուկները: Հասուն անհատների երկ.՝ 7–13 *մմ*: Ձմեռում են հասուն մլուկները՝ առավելապես անտառտնկարկներում՝ տերևային խաշամի տակ: Մատղաշ ցողունների հյութը ծծելուց բույսերը թառամում են, կամ աճը դանդաղում է: Սոմային հասունության ժամանակ խիստ վատանում է հացահատիկի որակը, և նվազում է ծլունակությունը:

ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ՓԱՅՏԱԲԶԵԶ, փայտաբզեզների ընտանիքի միջատ: Պարենի պաշարների վտանգավոր վնասատու. թրթուրները վնասում են հացահատիկը, ձավարեղենը, պաքսիմատը, ալրեղենը ևն: Ապրում է փակ շինություններում: Մարմինը (երկ.՝ 2–3 *մմ*) երկարավուն է, ուռուցիկ, ժանգակարմրավուն, վերևից մազիկներով ծածկված: Թրթուրները ձմեռում են պարենի շերտերում, որտեղ բացում են երկար փողրակներ: Գարնանը տեղաշարժվում են մթերքի մակերևույթի վրա և կրծելով (հարմնյակավորման համար) խորշեր են բացում (ալյուրի մեջ զարգանալով՝ առաջացնում են գնդաձև կնձիկներ): Բզեզները պահեստներում թռչում են երեկոյան ու գիշերը և չեն սնվում:

ՀԱՅԵՆԻ (Fraxinus), ձիթենազգիների ընտանիքի տերևաթափ ծառերի, հազվադեպ՝ թփերի ցեղ: Հայտնի է 70 տեսակ, ՀՀ–ում՝ 2՝ սովորականը՝ գրեթե բոլոր անտառներում, և սրապտուղը՝ Տավուշի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերում: Բարձր.՝ 20–40 *մ*: Բնափայտն ամուր է, ճկուն, գեղեցիկ նախշերով. օգտագործվում է մանր գործիքաշինության, շին–յան տարբեր բնագավառներում: Գեղազարդիչ է: Ապրում է մինչև 300 տարի:

ՀԱՅՀԱՄԵՄ (Trigonella), բակլազգիների ընտանիքի միամյա, հազվադեպ՝ բազմամյա խոտաբույսերի ցեղ՝ կումարինի սուր հոտով: Հայտնի է մոտ 130 (այլ տվյալներով՝ 70) տեսակ, ՀՀ–ում՝ 17՝ երկնագույն, գլխիկավոր, թրաձև, բարակ ևն: Տարածված է Արագածոտնի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերում, Երևանի շրջակայքում: Ցողունի բարձր.՝ 5–70 *սմ*: Որոշ տեսակներ դեղաբույսեր են. պարունակում են ամինաթթուներ, եթերայուղեր, ներկանյութ: Գլխիկավոր Հ. (հանդիպում է Արմավիրի մարզում) գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՀԱՅՈՒՆԻ Վարդան (Սոմունճյան, 1870–1944), բանասեր, ազգագրագետ, խմբ.: ՎԱՏՄՄ անդամ: Եղել է *«Բազմավէպ»*–ի խմբագրապետ: Հեղինակ է «Ճաշեր եւ խնջոյք Հին Հայաստանի մէջ» (1912), «Դաստիարակութիւն հին հայոց քով» (1923), «Երդմունք հին հայոց մէջ» (2–րդ հրտ.՝ 1932), «Հայուհին՝ պատմութեան առջև» (1936), «Պատմութիւն հայոց աղօթամատոյցին» (1965) և այլ աշխ–ների:

ՀԱՅՕՂԼՈՒ ՅՈՒՂ, **սիվուխայի յուղ**, թունավոր, տհաճ հոտով յուղանման հեղուկ է: Սպիրտային խմորման կողմնակի արգասիք է: Պարունակվում է չզտած էթանոլում:

ՀԱԼԻԲԻՅ (Haubitze), թաքստոց. թիրախներին գագաթնահար հրաձգությամբ հարվածելու կարճափող հրանոթ: Տրամաչափը՝ 100 *մմ* և ավելի, փողի բարձր.՝ մինչև 70^{o}, հրաձգության հեռ.՝ մինչև 24 *կմ*:

ՀԱՄՆՇՖԻԼԴ (Hounsfield) Գոդֆրի Նյուբոլդ (1919–2004), անգլիացի ճարտարագետ–ֆիզիկոս: Ստեղծել է ներքին օրգանների տեսագրման համակարգչ. ռենտգեն. շերտագիրը (1969): Նոբելյան մրց. (1979, Ա. *Կորմակի* հետ):

ՀԱՄՊՏՄԱՆ (Hauptmann) Գերհարդ (1862–1946), գերմանացի գրող: Գերմ. նատուրալիզմի առաջնորդը: Հեղինակ է «Արևածագից առաջ» (1889, հայ.՝ 1895), «Կառապան Հենշելը» (1898, հայ.՝ 1907), «Մայրամուտից առաջ» (1932, հայ. բեմ.՝ 1970) և այլ պիեսների, «Խև Էմանուել Քվինտը» (1910), «Մեծ մոր կղզին» (1924) և այլ վեպերի, նաև հեքիաթների, չափածո դրամաների: Հայ. հրատարակվել են նաև «Մենակ մարդիկ» (1901), «Ջուլիակներ» (1905), «Ջրասույզ զանգը» (1923) դրամաները: Նոբելյան մրց. (1912):

ՀԱՄՊՏՄԱՆ (Hauptman) Հերբերտ Աարոն (1917–2012), ամերիկացի մաթեմատիկոս, բյուրեղաֆիզիկոս: Բյուրեղ., սպիտակուց. և այլ կառուցվածքների վերծանման ուղիղ մեթոդների հեղինակներից: Նոբելյան մրց. (1985):

ՀԱՄՈՍ, ժողդ Նիգերիայում, Նիգերում և այլուր: Ընդհ. թիվը՝ 30,8 մլն (2001): Լեզուն՝ հաուսա: Հիմնականում սուննի մահմեդական են:

ՀԱՄՈՍԱ ԼԵԶՈՒՆԵՐ, աֆրիկ. լեզվախումբ: Ներառում է հաուսա, մուսգու, կոտոկո, անգաս, յանդուր. լոնգուդա և այլ լեզուներ:

ՀԱՄՈՒՍԹՈՆ (Houston) Ուիլյամ (1900–1968), ամերիկացի ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ անդամ (1943): 1922–ին որոշել է *պրոտոնի* զանգվածը, առաջարկել Ֆաբրի–Պերոյի ինտերֆերաչափով ստացված սպեկտրի պատկերի ցայտունությունը մեծացնելու եղանակ: ԱՄՆ ֆիզիկոսների միության նախագահ (1962):

ՀԱՄԻՍՀՈՖԵՐ Կառլ (1869–1946), գերմանացի աշխարհագետ, սոցիոլոգ, աշխարհաքաղ–յան գլխ. ներկայացուցիչներից: Հիմնավորել է գերմ. ֆաշիզմի քաղ–յունը:

ՀԱՄՈՍՏՈՐԻԱՆՆԵՐ (լատ.՝ haustor – խմոդ), բույսերի ծծիչներ, որոնք ծառայում են այլ բույսերից, երբեմն՝ նույն բույսի հարևան օրգաններից սննդանյութեր ներծծելուն: Մակաբույծ ծաղկավոր բույսերի (ճրագախոտ, գաղձ) Հ. տեսակափոխված արմատներն են:

ՀԱՄՖ (Hauff) Վիլհելմ (1802–1827), գերմանացի գրող: Հեղինակ է «Փոքրիկ Մուքը կամ Պատմություն փոքրիկ Մուքի մասին» (հայ.՝ 1954) և այլ հեքիաթների, քնար. բանաստեղծությունների, «Պատուոյ ետեւէն կամ Լիխթենշթայն» (1826, հայ.՝ ա. թ.) պատմավեպի և այլ գործերի: Հայ. հրատարակվել են «Ուխտաւորք» (1882), «Քար–սիրտ» (1899), «Երիտասարդ անգլիացին» (1899), «Ինքնակոչ իշխանը» (1908), «Արագիլ խալիֆի պատմութիւնը» (1911) պատմվածքները, «Շպեսարտի պանդոկը» (1983) հեքիաթների ու պատմվածքների ժող–ը:

ՀԱՓՈՒԿ (Resseda), հափուկազգիների ընտանիքի միամյա, երկամյա, հազվադեպ՝ բազմամյա խոտաբույսերի կամ թփերի ցեղ: Հայտնի է մոտ 60 տեսակ, ՀՀ–ում՝ 6 (դեղնավուն, դեղին, գնդապտուղ, մանրապտուղ ևն) Վայոց ձորի, Սյունիքի մարզերի ստորին և միջինլեռն. գոտիներում: Ցողունի բարձր.՝ մինչև *մ*: Որոշ տեսակներ դեղաբույսեր են. պարունակում են գլիկոզիդներ, C, E վիտամիններ ևն: Գեղազարդիչ է և մեղրատու: Գնդապտուղ Հ. գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՀԱՔԻՄ ԹԱՈՒՖԻԿ (ալ–Հաքիմ Թաուֆիկ) Հուսեյն (1898–1987), եգիպտացի արաբագիր գրող: Եգիպտ. պրոֆեսիոնալ թատրոնի և արդի արաբ. արձակի հիմնադիրներից: Հեղինակ է «Անկոչ հյուրը» (1918) և այլ պիեսների, «Հոգու վերադարձը» (1933) սոցիալ–կենցաղ. վեպի, նաև քնար., գր., հրապարակախոս. գործերի, հուշերի, էսսեների:

ՀԱՔՍ (Hacks) Պետեր (1928–2003), գերմանացի գրող: Հեղինակ է «Կոլումբոս» (բեմ.՝ 1954), «Զրաղացպանը Սանսուսիից» (1957), «Զրույց ֆոն Շտեյն գերդաստանում բացակայող պարոն ֆոն Գյոթեի մասին» (1978), «Ֆրեդենհունդա» (1985) պիեսների, նաև «Պատմություններ և ռոմաններ» (1985), «Բանաստեղծություններ» (1988) ժող–ների, նաև էսսեների:

ՀԱՔՍԼԻ (Huxley) Անդրու (Էնդրյու) Ֆիլդինգ (1917–2012), անգլիացի ֆիզիոլոգ: Թ. Հ. *Հաքսլիի* թոռը, Օ. Լ. և Ջ. Ս. *Հաքսլիների* եղբայրը: Հետազոտել է նեյրոններում էլ. հոսանքի ծնման իոն. մեխանիզմները: Հայտնաբերել է ակտինային և միոզինային թելերի սահքը մկան. կծկումների ժամանակ:

Նոբելյան մրց. (1963, Ջ. Ք. *Էքլսի* և Ա. Լ. *Հոջկինի* հետ):

ՀԱՔՍԼԻ Թոմաս Հենրի (1825–1895), անգլիացի կենսաբան: Ա. Ֆ. և Օ. Լ. *Հաքսլիների* պապը: Չ. *Դարվինի* հետևորդը և տեսության նշանավոր քարոզիչ–աշակերտը: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1864), Լոնդոնի թագավոր. ընկ–յան նախագահ (1883–85): Համեմատաանատոմ. հետազոտություններով ապացուցել է մարդու և բարձրակարգ կապիկների, թռչունների ու սողունների, մեդուզաների ու պոլիպների մերձավորությունը: Զարգացրել և հիմնավորել է ողնաշարավորների գանգի կառուցվածքի միասնության մասին դրույթը:

ՀԱՔՍԼԻ Ջուլիան Սորել (1887–1975), անգլիացի կենսաբան, փիլ.: Թ. Հ. *Հաքսլիի* թոռը, Ա. Ֆ. և Օ. Լ. *Հաքսլիների* եղբայրը: ՅՈՒՆԵՍԿՕ–ի 1–ին գլխ. տնօրենը (1946–48): Էվոլյուցիայի ժամանակակից սինթետիկ տեսության հիմնադիրներից: Աշխ–ները վերաբերում են էվոլյուցիայի, փորձարար. սաղմնաբանության, բարոյագիտ–յան, բնության պահպանության խնդիրներին: Թռչունների հարաբանեկան արարողությունների հետազոտություն–

ներով (1914) Հ. կարևոր ներդրում ունի բնագրագիտ–յան (էթոլոգիա) մեջ:

ՀԱՅՔԱԼԻ Օլդոս Լեոնարդ (1894–1963), անգլիացի գրող, գր–թատեր. քննադատ: Ա. Ֆ. և Ջ. Ս. *Հաքսլիների* եղբայրը, Թ. Հ. *Հաքսլիի* թոռը: Բանաստեղծություն–ներում ժխտել է աշխարհի գեղեցկությունն ու ներդաշնակությունը: Հեղինակ է «Դեղին Քրոմը» (1921), «Խեղկատակների շուրջպար» (1923), «Սքանչելի նոր աշխարհ» (1932), «Հանճարը և աստվածուհին» (1955), «Կղզի» (1962) և այլ վեպերի, նաև պատմվածքների, նովելների:

ՀԱՔՍՏՀԱՈՒԶԵՆ (Haxthausen) Ավգուստ ֆոն (1792–1866), բարոն, պրուս. պաշտոնյա, տնտեսագետ: 1843–ին, ռուս. կառ–յան նյութ. աջակցությամբ, ճանապարհորդել է Ռուսաստանում: Հանդես է եկել Ռուսաստանում ճորտատիր. իրավունքի աստիճանական վերացման օգտին: Իր «Ագրկովկաս» (1856) աշխ–յան մեջ ամփոփել է նաև Հայաստանին վերաբերող ճանապարհորդ. նոթերը (գլուխ IX–XI):

ՀԱՖԵԶ Շամսեդդին Մոհամմեդ (1325/26–1389/90), պարսիկ բանաստեղծ: Գազելի վարպետ: Անգիր իմացել է Ղուրանը, որի համար էլ անվանել են «Հաֆեզ» («հիշողության մեջ պահող»): Հ. երգել է կյանքը՝ իր ուրախություններով և վշտերով, ընդվզել՝ մարդուն ու նրա միտքը կաշկանդող պայմանականությունների դեմ: Հ–ի գործերը հայ. են թարգմանել Ա. Իսահակյանը, Մ. Խերանյանը, Հ. Հովհաննիսյանը, Ս. Ումառյանը և ուր.: Հայ. հրատարակվել են «Հազեականներ, քառեակներ ու տաղեր» (1922), «Լիրիկա» (1957), «Գազելներ» (2007), «Մոսալլայի պարտեզը» (2008) ժող–ները: Հոկտ. 12–ը Իրանում նշվում է որպես Հ–ի օր:

ՀԱՖՆԻՈՒՄ (Hafnium), Hf, տարրերի պարբեր. համակարգի IV խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 72, ա. զ.՝ 178,49: Կոչվել է հայտնագործման վայրի՝ Կոպենհագեն (ուշ լատ.՝ Hafnia) բ–ի անունով: Արծաթասպիտակավուն դժվարահալ մետաղ է, խտ.՝ 13,35 $գ/սմ^3$, $t_{հալ.}$՝ 2230°C: Օգտագործում են միջուկ. ռեակտորների կարգավորող կաղապարաձողեր, պլազմատրոնների էլեկտրոդներ պատրաստելու համար, ինչպես նաև ավիացիոն ու հրթիռ. տեխնիկայում:

ՀԵԲԵԼ (Hebbel) Քրիստիան Ֆրիդրիխ (1813–1863), գերմանացի գրող: XIX դ–ի գերմանացի խոշորագույն ողերգակ: «Հուդիթ» (1840) ողերգությունից հետո կնոջ ողերգ. ճակատագիրը դարձել է նրա գործերի հիմն. թեման: Հեղինակ է նաև «Մարիամ Մագթաղինացի» (1844) ժամանակակից թեմայով, «Հերովդեսը և Մարիամնան» (1850), «Գիգը և նրա մատանին» (1856) և այլ պիեսների, «Նիբելունգներ» (1862) եռերգության:

ՀԵԲԵՅ, պրովինցիա Հս. Չինաստանում: Տարածքը՝ 188 հզ. $կմ^2$, բն.՝ 72 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ *Շիջզյաչժուան*:

ՀԵԲԵՐ (Hebert) Ժակ Ռենե (1757–1794), Ֆրանս. մեծ հեղ–յան գործիչ, լրագրող: Խմբագրել է հեբերականների «Լը Պեր Դյուշեն» (ֆրանս.) պաշտոնաթերթը: 1792–ի դեկտ–ից՝ *Փարիզի կոմունայի* դատախազի տեղակալ: 1794–ի մարտին գլխավորել է *յակոբինյանների* դեմ ապստամբությունը: Հեղ. տրիբունալը դատապարտել է մահապատժի:

ՀԵԲԵՖՐԵՆԻԱ (< հուն. hebe – պատանեկություն և fren – խելք), **հեբեֆրենիայի համախտանիշ**, հոգեկան խանգարում, որը բնորոշվում է հիմարավուն շարժող. և խոսքային գրգռվածությամբ, կցկտուր մտածողությամբ, չպատճառաբանված բարձր տրամադրությամբ:

ՀԵԲԼԵՐ (Haebler) Կոնրադ (1857–1946), գրքի գերմանացի պատմաբան: Հիմն. աշխ–ը՝ «Ինկունաբուլների տառատեսակների ցանկերը» (հ. 1–5, 1905–24):

ՀԵԲՐԱ (Hebra) Ֆերդինանդ (1816–1880), ավստրիացի բժիշկ, մաշկաբանության հիմնադիրներից: Ստեղծել է առաջին մաշկաբան. կլինիկան: Առաջարկել է մաշկախտերի (դերմատոզներ) ախտաբանաանատոմ. դասակարգումը, մշակել դրանց բուժման մեթոդներ: Նկարագրել է մաշկի մի շարք հիվանդություններ, որոնք կոչվում են իր անունով:

ՀԵԲՐԻԴՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ, **Հեբրիդներ** (Hebrides), կղզեխումբ Ատլանտ. օվկ–ում՝ Շոտլանդիայի արմ. ափի մոտ: Տարածքը՝ 7,5 հզ. $կմ^2$, բն.՝ 45 հզ. (2011): Խոշոր կղզիները՝ Լյուիս, Սքայ, Մալ, Նորդ Ուիստ, Սաութ Ուիստ: Գերակշռում են բլրոտ, քարքարոտ հարթավայրերը, տեղ–տեղ՝ լեռները (1009 *մ* բարձր–յամբ, Կուլին հիլս): Ափերը խիստ կտրտված են: Բնակիչներն զբաղվում են ձկնորսությամբ և անասնապահությամբ:

ՀԵԳԱՆ, ք. Չինաստանի Հեյլունցզյան պրովինցիայում: Բն.՝ 1,1 մլն (2012): Ածխի արդյունահանման կենտրոն է:

ՀԵԳԵԼ (Hegel) Գեորգ Վիլհելմ Ֆրիդրիխ (1771–1831), գերմանացի փիլ., գերմ. դաս. փիլ–յան ներկայացուցիչ: Օբյեկտիվ իդեալիստ. հիմքի վրա ստեղծել է դիալեկտիկայի համակարգված տեսությունը: Հ. իր փիլ–յան հիմն. մեթոդաբան. դրույթները ձևակերպել է «Ոգու ֆենոմենոլոգիա» (1807) աշխ–յան մեջ: Ըստ Հ–ի՝ փիլ–յունը գիտականության բարձրագույն աստիճանն է: Հ., ի մի բերելով իր ժամանակի ողջ գիտելիքը, ամբողջ. համակարգով ներկայացրել է բնությունը, հաս–յունը և մարդկային մտածողությունը պատմ. զարգացման ու տրամաբ. կապակցությունների մեջ: Որպես ելակետ և միասնականացման հիմք ընդունել է «համաշխարհային ոգին»՝ «բացարձակ գաղափարը»: Ըստ վերջինիս զարգացման փուլերի՝ ներկայացրել է փիլ–յան համակարգի հիմն. բաժինները՝ տրամաբ–յունը, բնության փիլ–յունը և ոգու փիլ–յունը («Փիլիսոփայական գիտությունների հանրագիտարան», 1817): «Ոգու փիլիսոփայության» մեջ մարդկային ոգին անձնավորում է մարդու անհատ. ու հաս. կեցությունը: Պատմության ըմբռնման մեջ Հ. մերժում է սուբյեկտիվիզմը: Ըստ Հ–ի՝ անհատների և ժողդ–ների ձգտումներն ու գործողությունները պայմանավորված են պատմ. օրինաչափությամբ. յուրաքանչյուր ժողդ (նաև անհատ) իր պատմ. առաքելությունն իրագործելուց հետո անխուսափելիորեն անհետանում է ասպարեզից: Հ. գեղագիտ–յունը մշակել է որպես արվ–ի փիլ–յուն, որի առանցքը գեղեցիկի գաղափարն է, արվ–ի մեջ՝ իդեալը:

Հայ իրականության մեջ հեգելյան գաղափարների, հատկապես՝ բացարձակ իդեալիզմի համակարգի ազդեցությունը որոշակիորեն զգացվում է Պ. Էմմանուելյանի և Ա. Գուրգենյանի կրոնափիլիսոփ. ուսմունքներում և մասամբ՝ Ն. Ռուսինյանի էկլեկտիկ. փիլ–յան մեջ: Տես նաև *Հեգելականություն, Նորհեգելականություն*:

ՀԵԳԵԼԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, Եվրոպայում XIX դ–ի 1–ին կեսին ձևավորված փիլ–յան հոսանք, որի հիմքում Գ. *Հեգելի* ուսմունքն է: Ձևավորվել է Գերմանիայում 1820–ական թթ–ի կեսերին: Կրոնի հարցերի շուրջ վիճաբանության ընթացքում առանձնացել են աջ հեգելականները (հին հեգելականներ՝ Կ. Հեշել, Հ. Հինրիխս, Հ. Գաբլեր), որոնք Հեգելի ուսմունքը մեկնաբանում էին կրոն. ուղղադավանության ոգով, իսկ ծայրահեղ. ձախ հեգելականները (երիտասարդ հեգելականներ՝ Դ. Շտրաուս, Ա. Ռուգե, Բ. Բաուեր, Լ. Ֆոյերբախ, Կ. Մարքս և ուր.) պատմության մեջ սուբյեկտիվ գործոնի վճռական նշանակությունը հակադրել են հեգելյան համաշխ. ոգուն: Միջանկյալ դիրքում էր «ուղղափառ» Հ., որը ձգտում էր պահել Հեգելի ուսմունքի «անաղարտությունը»: XIX դ–ի վերջին ձևավորվել է *նորհեգելականությունը*:

ՀԵԳԵՄՈՆԻԱ (հուն.՝ hegemonia – առաջնորդություն, ղեկավարություն), ուժի, ազդեցության գերազանցություն, պատմականորեն օգտագործվել է նշանակելու համար հինհուն. պոլիսների միության ամենաուժեղ քաղաք–պետությունը, ավելի ուշ՝ երկրում որևէ դասակարգի տիրապետող, ղեկ. դերը մյուսների նկատմամբ:

ՀԵԳԵՍԻԱՍ (Hegesias, մոտ մ. թ. ա. 320–280), հույն փիլ.: Կիրենյան դպրոցի ներկայացուցիչ: Ի տարբերություն *Արիստիպոսի*՝ բարիք է համարել ոչ այնքան վայելքներին տրվելը, որքան տառապանքի բացակայությունը, այստեղից էլ՝ պատկերացումն այն մասին, որ մահը բարիք է:

ՀԵԳԻՆՍ (Հագինս, Huggins) Ուիլյամ (1824–1910), անգլիացի աստղագետ, աստղասպեկտրադիտման առաջամարտիկներից: Աշխ–ները վերաբերում են աստղերի, մոլորակների, երկնաքարերի, միգամածությունների սպեկտրների հետազոտմանը, ապացուցել է գազային միգամածությունների գոյությունը (1864):

ՀԵԴԱ (Heda) Վիլլեմ (1594–1680), հոլանդացի գեղանկարիչ: Արծաթաշագանակագույնի զուսպ գուներանգներով նատյուրմորտները («նախաճաշեր») աչքի են ընկնում պարզությամբ և բնական կոմպոզիցիայով («Նախաճաշ՝ մոշով կարկանդակով», 1631, ևն):

ՀԵԴԱՅԱԹ Սաղեղ (1903–1951), պարսիկ գրող, բանասեր, թարգմանիչ: «Թափառիկ շունը» (1943), «Անառակություն» (1944) պատմվածքների ժող–ներում քննադատաբար է ներկայացրել պարսկ. իրականությունը, «Հաջի աղա» (1945, հայ.՝ 1974) վիպակում և այլ երկերում հանդես է եկել գաղութատիրության դեմ: Հեղինակ է նաև գրաքննադատ. գործերի:

ՀԵԴՈՆԻԶՄ (հուն.՝ hedone – հաճույք), բարոյագիտ–յան ուղղություն, ըստ որի՝ հաճույքն ու բավականությունը մարդու վարքագծի հիմն. նպատակն ու շարժառիթն են: Հ. ձևավորվել է անտիկ շրջանում, զարգացրել է *Արիստիպոսը*՝ *Կիրենյան դպրոցը*, ապա՝ *Էպիկուրը*՝ *էպիկուրյան դպրոցը* (մոտեցել է *էվդեմոնիզմին*): Ֆրանս. մատերիալիզմի հետևորդները (XVIII դ.) Հ–ի սկզբունքը գործածել են բանական էգոիզմի ուսմունքը հիմնավորելու համար: Նոր ժամանակներում Հ. բնորոշ է *ուտիլիտարիզմին*:

ՀԵԹԱՆՈՍՄԱԲԱՐՅՈՒՆ, նախաքրիստ., ինչպես նաև ոչ քրիստ. կրոնների ան–

վանումը քրիստ. աստվածաբանության ու պատմ. գրկ–յան մեջ: Ժամանակակից գիտ–յան մեջ կիրառվում է «պոլիթեիզմ»՝ բազմաստվածություն հասկացությունը: Հայ կրոնագիտ–յան մեջ ընդունված է Հ. անվանել հայոց նախաքրիստ. կրոն:

ՀԵԹՈՒՄ, **Հեթում պատմիչ**, XIII–XIV դդ–ի պատմագիր, պետ. գործիչ՝ Հեթումյանների իշխան. և թագավոր. տոհմից: 1294–1305–ին՝ հայոց սպարապետ: Վարել է մի շարք հաղթ. ճակատամարտեր հարևան մահմեդ. իշխանությունների դեմ: 1305–ին սպարապետությունը հանձնել է իր որդի *Օշինին*, ընդունել կաթոլիկություն և մեկնել Կիպրոս՝ կրոնավորելու: 1307–ին Կղեմես V պապի հանձնարարությամբ գրել է մոնղոլ–թաթարների պատմությունը: 1842–ին Մկրտիչ *Ավգերյանը* լատ–ից թարգմանել է գրաբար՝ կցելով նաև Հեթումի անունով հայտնի ժամանակագրությունը, որն ընդգրկում է արժեքավոր տեղեկություններ Հայաստանի և ասիական ու եվրոպ. պետությունների 1096–1307–ի պատմությունից:

ՀԵԹՈՒՄ Ա (1213–1270), Կիլիկիայի հայոց թագավոր՝ 1226–69–ին: Հեթումյանների արքայատան հիմնադիրը: 1243–ին խաղաղության և փոխօգնության պայմանագիր է ստորագրել մոնղոլ. զորավար Բաչու Նոյինի հետ, իսկ 1254–ին մոնղոլների Կարակորում մայրաքաղաքում նոր դաշնագիր կնքել Մանգու խանի հետ: 1256–59–ին մոնղոլների զինակցությամբ զսպել է հարևան մահմեդ. պետություններին, ազատագրել մի շարք բերդեր ու քաղաքներ, Կիլիկյան Հայաստանին միացրել Կապադովկիայի հվ. շրջանները: Եգիպտոսի սուլթանությունը 1266–ին ապատակել է Կիլիկիան: 1268–ի հուլիսին Հ. Ա որոշ զիջումներով հաշտություն է կնքել սուլթանության հետ, գահը հանձնել (1269) գերությունից ազատված իր որդուն՝ Լևոնին, մտել վանք, որտեղ և մահացել է: Հ. Ա–ի անունով և պատկերով հատվել են ոսկե, արծաթե և պղնձե դրամներ:

ՀԵԹՈՒՄ Բ (ծ. թ. անհտ–1307), Կիլիկիայի հայոց թագավոր՝ 1289–ից: Հաջորդել է հորը՝ *Լևոն Գ*–ին: Հ. Բ–ի լատինամոլ վարքագծի համար Եգիպտոսի Աշրաֆ սուլթանը չեղյալ է հայտարարել 1285–ին Կիլիկյան Հայաստանի հետ կնքած 10–ամյա հաշտության պայմանագիրը, 1292–ին զավթել Հռոմկլա ք–ը: 1294–ին գահը զիջելով իր եղբայր Թորոսին՝ Հ. Բ մտել է վանք, սակայն ավագանու պահանջով 1295–ից կրկին գահակալելով՝ փորձել է վերականգնել դաշինքը մոնղոլների և Բյուզանդիայի հետ: 1296–ին նրա եղբայր *Սմբատը* գրավել է գահը և նրան բանտարկել Բարձրբերդում: 1299–ին դարձյալ գահ հրավիրված Հ. Բ մոնղոլների աջակցությամբ ազատագրել է կորցրած հողերը: 1301–ին Հ. Բ Կիլիկյան Հայաստանի թագավոր է օծել մանկահասակ եղբորորդուն՝ *Լևոն Գ*–ին, և դարձել նրա խնամակալը (թագավորահայրը): 1307–ին թաթար զորավար Փիլարդուն Հ. Բ–ին և Լևոն Գ–ին (40 հայ նշանավոր իշխանների ուղեկցությամբ) բանակցության պատրվակով հրավիրել է Անարզաբա և կոտորել՝ խաչակրաց նոր արշավանք կազմակերպելու մեղադրանքով:

«ՀԵԹՈՒՄ Բ ԹԱԳԱՎՈՐԻ ՃԱՇՈՑ», ձեռագիր մատյան (Մոնդ., ձեռ. № 979, գրիչն ու ծաղկողը հայտնի չեն): Ընդօրինակվել և նկարազարդվել է 1286–ին, հավանաբար՝ Սկևռայի վանքում՝ Հեթում թագաժառանգի (հետագայում՝ *Հեթում Բ*) պատվերով: Ձեռագրի շուրջ 700 մանրանկարները բացառիկ երևույթ են թե՛ հայկ., թե՛ ողջ արևելաքրիստ. գրքարվ–ի պատմության մեջ: Օգտագործված են համաշխ. արվ–ի գեղագիտ. նվաճումները, մասնավորապես՝ ժամանակի իտալ. գեղանկարչության ոճ. առանձնահատկությունները:

ՀԵԹՈՒՄՅԱՆՆԵՐ, հայ իշխան. և թագավոր. տոհմ Կիլիկյան Հայաստանում: Հ–ի իշխանության հիմնադիր *Օշին Ա*–ն խուսափելով սելջուկ–թուրքերի հալածանքներից, 1073–ին իր ազգատոհմով Կիլիկիա էր տեղափոխվել Արցախ նախ–ի Մայրյաց ջուրք ավանից: Կիլիկիայում իշխող Արլուղարիբ Արծրունին Օշինին պարգևել է Լամբրոն բերդը՝ շրջակա տարածքով, որտեղ նրա հաջորդներն իշխել են մինչև XIII դ–ի սկիզբը: Օշինին հաջորդած որդին՝ Հեթում Բ իշխանը (XII դ–ի 1–ին կես), Լամբրոնը թողել է ավագ որդուն՝ Օշին Բ–ին, իսկ Պապեռոնը՝ կրտսերին՝ Սմբատին: 1201–ին *Լևոն Բ* Մեծ թագավորը Հեթում Գ–ին հրավիրել է Տարսոն, ձերբակալել և գրավել Լամբրոնը: Պապեռոնի տեր Վասակի որդի Կոստանդինը դարձել է Կիլիկյան Հայաստանի սպարապետը, Լևոն Բ–ի մահից (1219) հետո՝ պետության խնամակալը՝ պայլը: Նրա որդի *Հեթում Ա*–ն հռչակվել է Կիլիկյան Հայաստանի թագավոր, դարձել Հ–ի արքայատոհմի հիմնադիրը: *Լևոն Ե*–ի (1320–42) մահից հետո ընդհատվել է Հ–ի իշխող տոհմածյուղը (արական գծով):

ՀԵԼԻԱԴԵ–ՌԱԴՈՒԼԵՍԿՈՒ Յոն (Heliade–Rădulescu Jon, 1802–1872), ռումին բանաստեղծ, լուսավորիչ, պատմաբան: Ռումինիայի ակադեմ. ընկ–յան (1867, 1879–ից՝ Ռումինիայի ակադ.) 1–ին նախագահը: Ռումին. թատրոնի, տպագրության, լրագրության հիմնադիրը: Հեղինակ է «Մի գիշեր Տըրգովիշտեի ավերակներում» (1836) չափածո եղերերգության, «Իմ սիրելի ստվերները» (1844) և այլ պոեմների, «Թևավոր ոգի» (1844) բալլադի, «Բանաստեղծական կանոններ կամ Քերականություն» (1831), «Ընդհանուր բանաստեղծության ամբողջական դասընթաց» (հ. 1–3, 1868–70) և այլ գիտ. աշխ–ների:

ՀԵԼԻԿՈԲԱԿՏԵՐ ՊԻԼՈՐԻ (Helicobacter pylori), պարուրաձև բակտերիա: Ախտահարում է ստամոքսի և 12–մատնյա աղիի տարբեր հատվածներ: Քրոնիկ. ստամոքսաբորբի և ստամոքսի խոցի հիմն. հարուցիչներն են: Հայտնաբերվել է 1893–ին: Բացահայտել են ավստրալիացի գիտնականներ Ռ. Ջ. *Ուորենը* և Բ. *Մարշալը:* Նոբելյան մրց. (2005):

ՀԵԼԻՈ... (հուն.՝ helios – արեգակ), բարդ բառերի սկզբնամաս. ցույց է տալիս Արեգակին վերաբերելը:

ՀԵԼԻՈԳՐԱՖ, **արևագրիչ**, 1. Արեգակի նկարահանման աստղագիտ. սարք: 2. Օրվա ընթացքում Արեգակի փայլի տևողությունն ինքնաշխատ գրանցող սարք: 3. Արևի ճառագայթներն անդրադարձնող հայելիով ազդանշաններ հաղորդող սարք՝ XIX–ի վերջ–XX դ–ի սկզբին:

ՀԵԼԻՈԴՈՐՈՍ, III–IV դդ–ի հույն գրող: «Եթովպական» վեպը անտիկ շրջանի վեպի գլխ. նմուշն է: Որոշակի ազդեցություն է թողել XVII–XVIII դդ–ի արևմտաեվրոպ. գրկ–յան վրա:

ՀԵԼԻՈԹԵՐՄԵՐ, **արևաջերմուկներ**, բնական կամ արհեստ. քլորիդնատրիումային ջրերով բաց ջրամբարներ՝ ստորին շերտերում աղերի բարձր կոնցենտրացիայով և 38–40°C ջերմաստիճանով: Ունեն կազդուրիչ ազդեցություն, մարզում են սիրտանոթ. համակարգը, օգտագործվում են որպես բուժման մեթոդ՝ հենաշարժ. ապարատի հիվանդությունների ժամանակ:

ՀԵԼԻՈՄԵՏՐ, **արևաչափ**, երկն. լուսատուների տեսանելի տրամագծերի և այդ լուսատուների միջև եղած փոքր անկյունների չափման սարք:

ՀԵԼԻՈՍ (հուն.՝ Helios – արեգակ), արևի աստվածը, *Զևսի* սուրհանդակը հուն. դից–յան մեջ, եղել է նաև կույրերին ամոքող և կուրությամբ պատժող աստվածը: *Սևրենայի* և *Էոսի* եղբայրը: Մ. թ. ա. V դ–ից հետո հույները Հ–ին նույնացրել են *Ապոլոնի*, իսկ հռոմեացիները՝ *Սոլ* աստծու հետ:

ՀԵԼԻՈՏԵԽՆԻԿԱ, գիտ–յան և տեխնիկայի բնագավառ. ուսումնասիրում է արեգակն. ճառագայթման էներգիայի փոխակերպումը (գործն. օգտագործման համար) էներգիայի այլ տեսակների: Առավել նպատակահարմար և հեռանկարային է Հ–ի միջոցների օգտագործումն էներգիայի փոքրատարողունակ, ցրված սպառիչների համար, հիմնականում՝ զգալի արեգակն. ճառագայթում ունեցող շրջաններում, նաև Տիեզերքում:

ՀԵԼԻՈՏԵՂԱԿԱՅԱՆՔ, արեգակն. ճառագայթման էներգիան գործն. օգտագործման համար այլ տեսակների (օր.՝ ջերմ., էլեկտ. ևն) փոխակերպման սարքավորում:

ՀԵԼԻՈՏՐՈՊ (< *հելիո*... և հուն.՝ tropos – պտույտ, ուղղություն), 1. գեոդեզ. գործիք, որի հիմն. մասը եռանկյունավորման դեպքում մի գեոդեզ. կետից մյուսն արևի ճառագայթներն անդրադարձնող հարթ հայելի է: 2. Կարմիր բծերով կանաչ միներալ, քաղկեդոնի տարատեսակ: Օգտագործվում է զարդերի պատրաստման համար:

ՀԵԼԻՈՏՐՈՊԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱԲԵՐԻՉ, **սննդային թունավորում**. առաջանում է արևադարձ. բույսի սերմեր պարունակող հացահատիկի ալյուրից պատրաստված հացի կամ այլ մթերքների օգտագործումից: Բնորոշվում է լյարդաբորբով, փայծաղի մեծացմամբ, ջրգողությամբ, արյունահոս. նախատրամադրվածությամբ:

ՀԵԼԻՈՏՐՈՊԻԶՄ, **արևաշարժություն**, բույսերի օրգանների (օր.՝ արևածաղկի զամբյուղի) շարժումներն արևի լույսի ազդեցությամբ: *Ֆոտոտրոպիզմի* մասնավոր դեպքերից է:

ՀԵԼԻՈՏՐՈՊԻՆ, 3,4–մեթիլեներկօքսիբենզալդեհիդ, անգույն բյուրեղներ, $t_{հալ.}$՝ 36,5–37°C: Պարունակվում է վանիլի պատիճներում, հելիոտրոպի և յասամանի ծաղիկներում: Բուրավետ նյութ է օծանելիքի արտադր–յան մեջ:

ՀԵԼԻՈՖԻՏՆԵՐ (< *հելիո*... և phyton – բույս), **լուսաբույսեր**, արևոտ բնակավայրերում աճող լուսասեր բույսեր (օր.՝ սոճի, կեչի, կաղնի, շատ հացահատիկ. բույսեր ևն):

ՀԵԼԻՈՒՄ (Helium), He, տարրերի պարբեր. համակարգի VIII խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 2, ա. զ.՝ 4,002602: Իներտ գազ է, անգույն և անհոտ, խտ.՝ 0,178 $գ/սմ^3$: Բոլոր գազերից ավելի դժվար է հեղուկանում (–268,93°C–ում): Միակ նյութն է, որ չի պնդանում բնականոն ճնշման պայմաննե-

րում: Հ. պարունակվում է օդում ու երկրակեղևում, որտեղ մշտապես առաջանում է ուրանի և այլ α–ճառագայթաակտիվ տարրերի քայքայման արդյունքում: ^{4}He-ի ատոմի միջուկները (բաղկացած են 2 պրոտոնից և 2 նեյտրոնից) կոչվում են α–մասնիկներ: Հ. նշանակալիորեն տարածված է Տիեզերքում, մասնավորապես՝ Արեգակի վրա, որտեղ և առաջին անգամ հայտնաբերվել է (հուն.՝ Helios – Արեգակ): Ստանում են բնական գազերից: Օգտագործում են իներտ միջավայրեր ստեղծելու համար, օդագնացության մեջ (օդապարիկները և ստրատոստատները լցնելու համար):

Հեղուկ ^{4}He-ը և ^{3}He-ը քվանտ. հեղուկներ են. հատկությունները 2–3 Կ ջերմաստիճաններում հիմնականում որոշվում են քվանտ. էֆեկտներով: Օժտված են գերհիոսունությամբ 2,17 Կ–ից (–270,98ºC) ցածր ջերմաստիճանում:

Հեղուկ ^{3}He-ը մթն. ճնշման տակ եռում է 3,2 Կ ջերմաստիճանում, $T_{կր.}$ = 3,3 Կ, պնդանում է 3,4 *ՄՊա*–ից բարձր ճնշումների դեպքում: Սառնազդակ է գերհաղորդիչ մագնիսները սառեցնելու և ցածր ջերմաստիճաններ ստանալու համար: Նրանց ֆիզ. հատկությունները պինդ վիճակում նման են:

^{4}He–ի և ^{3}He–ի համար հայտնի են 3–ական կայուն բյուրեղ. ձևափոխություններ:

ՀԵԼԻՈՍ ԱՎԼՈՍ (Hellius Aulus, մոտ 130–180), հռոմեացի գրող: Հեղինակ է «Ատտիկյան գիշերներ» (հ. 1–20) լատին և հույն հեղինակների գործերից բանաքաղված հանրագիտ. աշխ–յան, որը նրա կորած աշխ–ների մի մասն է:

ՀԵԼԼԱԴԱ, *Հելլաս* (հուն.՝ Ellάda), հնում Թեսալիա ք–ի և մարզի (Հոմերոսի մոտ), հետագայում՝ ողջ Հունաստանի (ըստ Հեսիոդոսի, Դեմոսթենեսի և ուր.), 1883–ից՝ հուն. անկախ պետության հուն. անվանումը: Առաջացել է հույների առասպել. նախահոր՝ *Հելլենոսի* անունից, նշանակում է «հելլենների երկիր»:

ՀԵԼԼԵՆԻԶՄ, *Ակեքսանդր Մակեդոնացու* նվաճած Արլ–միջերկրածով., Մերձ. ու Միջին Արևելքի երկրների պատմության 300–ամյա ժամանակաշրջանը (մ. թ. ա. 323–30–ը, երբ Հռոմը նվաճել է վերջին հելլենիստ. պետությունը՝ Եգիպտոսը): Այդ տարածաշրջանում ձևավորված մշակույթը հայտնի է «հելլենիստական մշակույթ» անվանմամբ, որը հուն. (հելլեն.) և տեղ. արլ. մշակույթների համադրություն է:

Հ. տարածվել է նաև հայ իրականության մեջ, որի պատմությունը բաժանվում է «բուն հելլենիստական» և «ուշ հելլենիստական» (մ. թ. I–III դդ.) փուլերի: Առաջինում *Արտաշեսյանների* պետությունն ստացել է հելլենիստ. միապետության բնույթ, թագավորները հովանավորել են զարգացման հելլենիստ. ուղին: Կառուցվել են անտիկ աշխարհի ճարտ–յան ազդեցությունը կրող պալատներ, տաճարային սյունազարդ շենքեր, բաղնիքներ, որոնց մնացորդները հայտնաբերվել են Վաղարշապատում և Արտաշատում: Հելլենիստ. արվ–ի նշանավոր ստեղծագործություններից են *Տիգրան Բ–ի, Արտավազդ Բ–ի* և նրանց հաջորդների հատած արծաթե ու պղնձե դրամները: Արտավազդ Բ հուն–ով գրել է ողբերգություններ, ճառեր, պատմ. երկեր: Ուշ հելլենիստ. դարաշրջանի ճարտ. նմուշներից են *Գառնի* ամրոցը, Արեգ–Միհրի պաշտամունքին նվիրված տաճարը, Գառնիի հեթանոս. տաճարը (մ. թ. 77): Գեղ. մեծ արժեք ունի Գառնիի արքունի բաղնիքի հատակի խճանկարը (III դ–ի վերջ): Ուշ Հ–ի դարաշրջանում նկատելի է քրիստ. մշակույթի ազդեցությունը: Հայկ. հելլենիստ. մշակույթը պայմանավորել է վաղ միջնադարի հայ մշակույթի վերելքն ու համաշխ. նշանակությունը:

ՀԵԼԼԵՆՈՍ, հելլենների առասպել. նախահայրն ու անվանադիրը: Համարվել է *Պրոմեթևսի* թոռը, Դևկալիոնի և Պիռռեի որդին:

ՀԵԼԼԵՐ (Heller) Բերտ (1912–1970), գերմանացի գեղանկարիչ: Հեղինակ է դասակարգ. պայքարի թեմաներով նկարների և որմնանկարների («1525–1844–1949», 1953–57), արտահայտիչ դիմանկարների («Բ. Բրեխտ», 1954–55):

ՀԵԼԼԵՐ Ջոզեֆ (1923–1999), ամերիկացի գրող: Հեղինակ է «Հնարք–22» (1961) գրոտեսկաֆանտաստիկ., «Ինչ–որ բան պատահել է» (1974) երգիծ–հոգեբ. վեպերի: «Մաքուր ոսկի» (1979) վեպը Նյու Յորքի ինտելեկտուալ վերնախավի նկարագիրծաղրանկարն է:

ՀԵԼՄԱՆ (Hellman) Լիլիան (1905–1984), ամերիկացի դրամատուրգ: Հեղինակ է «Աղվեսիկներ» (1939), «Ռեյնի վրա» (1941) և այլ պիեսների, «Ստոր ժամանակներ» (1976), «Կարող է պատահել» (1980) ինքնակենսագր. արձակ գործերի:

ՀԵԼՄԻՆԹՆԵՐ (հուն.՝ helmintis, սեռ. հոլ.՝ helmintos – որդ, ճիճու), մակաբույծ որդեր, մարդկանց, կենդանիների և բույսերի հիվանդությունների՝ հելմինթոզների հարուցիչներ: Դրանց շարքին են դասվում տափակ և առաջնախոռոչավոր որդերը: Մարդկանց Հ. ճիճուներն են: Հելմինթոզների այն հարուցիչները, որոնք կարող են մակաբուծել մարդկանց և կենդանիների օրգանիզմներում կոչվում են հելմինթոզոնոզներ: Եզրույթն առաջարկել են հելմինթոլոգներ Կ. Ի. Սկրյաբինը և Ռ. Ս. Շուլցը:

ՀԵԼՄՀՈԼՑ (Helmholtz) Հերման Լյուդվիգ Ֆերդինանդ (1821–1894), գերմանացի ֆիզիկոս, մաթեմատիկոս, ֆիզիոլոգ և հոգեբան: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ.անդամ (1868): Առաջինն է տվել էներգիայի պահպանման օրենքի մաթ. հիմնավորումը, բացահայտել այդ օրենքի համընդհանրությունը: *Նվազագույն գործողության սկզբունքը* կիրառել է թերմոդինամիկայի և էլեկտրադինամիկայի խնդիրների լուծման համար, բացահայտել դրա կապը թերմոդինամիկայի II սկզբունքի հետ, ներմուծել (1882) ազատ և կապված էներգիաների գաղափարը քիմիայում (տես *Հելմհոլցի էներգիա*): Հայտնաբերել է լեյդենյան շշի տատանող. պարպման երևույթը: Ուսումնասիրել է մկան. կծկումների շարժընթացը (1850–54), առաջինն է չափել (1850) նյարդ. գրգիռի տարածման արագությունը: Տվել է աչքի *ակոմոդացիայի* (1853), կորտյան օրգանի լսող. ֆունկցիայի (ռեզոնանսի ֆիզ. օրենքների հիման վրա) տեսությունը:

ՀԵԼՄՀՈԼՑԻ ԷՆԵՐԳԻԱ, *իզոխոր–իզոթերմ էներգիա, ազատ էներգիա* (ֆիզ.), թերմոդինամիկ. պոտենցիալներից մեկը (F), որը սահմանվում է որպես *ներքին էներգիայի* (U) և թերմոդինամիկ. ջերմաստիճանի (T) ու *էնտրոպիայի* (S) արտադրյալի տարբերություն (F = U – TS): Հավասարակշռված իզոթերմ շարժընթացում համակարգի աշխ–ը հավասար է Հ. է–ի նվազմանը: Այդպիսի իզոթերմ շարժընթացն ինքնաբերաբար կարող է ընթանալ միայն Հ. է–ի նվազման ուղղությամբ:

ՀԵԼՄՈՆԹ (Helmont) Յան Բապտիստա վան (1579–1644), հոլանդացի բնախույզ, յատրոքիմիայի և վիտալիզմի ներկայացուցիչ: Առաջարկել է «գազ» եզրույթը: Առաջինն է ուսումնասիրել բույսերի սննդառությունը:

ՀԵԼՍԻՆԿԻ (Helsinki, շվեդ.՝ Հելսինգֆորս), Ֆինլանդիայի մայրաքաղաքը (1917–ից), նվինգստ Բալթիկ ծովի Ֆինն. ծոցի ափին: Երկրի գլխ. արդ. և մշակութ. կենտրոնն է: Կան մեքենաշին., տեքստիլ, քիմ., սննդի արդ–յան և այլ ձեռն–ներ: Գործում են Սուոմենլինննա, Ատենսում, Ճարտ., Ազգ. և այլ թանգարաններ: Հիմնադրվել է 1550–ին: 1641–ին փոխադրվել է 5 *կմ* ավելի հվ՝ Էստնես թ–կղզու ծայրը: 1812–ից եղել է Ֆինլանդ. մեծ իշխանության (Ռուս. պետության կազմում) մայրաքաղաքը: Ճարտ. հուշարձաններից են Սենատի շենքը (XIX դ.), Գլխ. կայարանը, «Ֆինլանդիա» պալատը ևն: Հ–ում անցկացվել են XV ձմեռ. օլիմպ. խաղերը (1952):

ՀԵԼՍԻՆԿԻԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Ֆինլանդիայի հնագույն և խոշոր համալսարանը: Հիմնադրվել է 1640–ին Տուրկու ք–ում՝ որպես Թագավոր. ակադ.: 2015–ին ուներ շուրջ 38 հզ. ուսանող:

ՀԵԼՎԵՏՆԵՐ, Շվեյցարիայի հս–արմ–ում ապրած կելտ. ցեղեր մ. թ. ա. վերջ–մ. թ. սկզբներին: Հ–ի անունից առաջացել է *Հելվեցիան*:

ՀԵԼՎԵՑԻԱ (Helvetius), Շվեյցարիայի լատ. անվանումը (*հելվետների* անունից), օգտագործվում է փոստ. նամականիշների վրա:

ՀԵԼՎԵՑԻՈՒՍ (Helvetius) Կլոդ Ադրիան (1715–1771), ֆրանսիացի փիլ., XVIII դ–ի ֆրանս. հեղ–յան գաղափարախոս, լուսավորիչ:1751–ին ընդգրկվել է հանրագիտակների շարքերը: Հ. կողմնակից էր այն ուսմունքին, ըստ որի՝ անհատի ձևավորման համար վճռորոշ է միջավայրը, իսկ հաս. զարգացման գլխ. շարժիչ ուժը մարդու գիտակցությունն ու կրքերն են («Մարդու, նրա մտավոր ունակությունների և դաստիարակության մասին», 1771): Փարիզի խորհրդարանի ցուցումով հրապարակավ այրել են Հ–ի «Մտքի մասին» (1758) աշխ–ը՝ համարելով կրոնի և պետության համար վտանգավոր:

ՀԵԽԱՆ, սովորաբար՝ չորսուի (երկաթբետոնե, պողպատե կամ փայտե) տեսքով ծռման տակ աշխատող կառուցվածք. տարր:

ՀԵԽԱՆՎԱՅԻՆ ՍՊՈՐՏ, մարզաձև. ընդգրկում է հեծանվով մրցարշավները կտրտված տեղանքում (կրոս), խճուղիներում, մրցուղիներում (տրեկ) և ձևավոր երթը: Հ. ս–ի առաջին պաշտոն. մրցումներն անցկացվել են Ծրանսիայում (1869)՝ փայտե հեծանիվներով: Աշխարհի 1–ին մրցուղային (տրեկ) առաջնությունը կայացել է 1893–ին, խճուղայինը՝ 1921–ին, փակ շինությունում՝ 1929–ին, կրոս մրցաձևինը՝ 1950–ին: Հ. ս. օլիմպ. խաղերի ծրագրում ընդգրկվել է 1896–ից:

ՀԵԽԵԼԱԶՈՒՐ, ցամաք. զորատեսակ, որտեղ տեղաշարժվելու և մարտնչելու համար օգտագործվում են հեծկան ձիեր: Հին և միջին դարերում այն մի շարք բանակների հիմն. հարված. ուժն էր: XIX դ–ի կեսերից Հ–ի դերը նվազել է, 1950–ական թթ–ից Հ., որպես զորատեսակ, վերացել է: Հ. առա-

ջացել է Ասորեստանում, Արաբատյան թագավորությունում: Հռչակված էր նաև հինհայկ. Հ.՝ այրուձին: Կայացած Հ. է ունեցել Ալեքսանդր Մակեդոնացին: Հ. եղել է խորհրդ. բանակում ՀՄՊ-ի տարիներին:

ՀԵԾՅԱԼՆԵՐ իսկական, իիննևմոնիդներ, մակաբույծ թաղանթաթևավորների ենթակարգի միջատների ընտանիք: Երկ.՝ 0,2–40 *մմ*: Թրթուրները զարգանում են այլ միջատների (հազվադեպ՝ սարդերի) մարմնում: Ձվադրելիս էգը «հեծնում» է զոհի վրա, որի ներսում զարգանում է թրթուրը (այստեղից՝ անվանումը): Հայտնի է ավելի քան 60 հզ. տեսակ: Օգտագործում են որպես վնասատու միջատների դեմ պայքարի կենսբ. միջոց:

ՀԵԿԱՏԵ, լուսնի, կախարդության աստվածուհին հուն. դից-յան մեջ: *Զևսի* և *Հերայի* դուստրը: Հոգացել է մարդկանց բարեկեցությունը, հովանավորել նորածիններին, նավագնացներին, որսորդներին, երկրագործներին: Մ. թ. ա. V դ–ից հետո՝ գիշեր. մղձավանջների, անդրշիրիմ. ստվերների, անեծքի ու կախարդանքի աստվածուհի: Պատկերվել է եռակերպարանք բարձրահասակ կնոջ տեսքով, վեց ձեռքերին՝ ջահ ու նիզակ, վարսերի մեջ՝ օձեր: Նույնացվել է *Սելենայի, Պերսեփոնեի* և *Արտեմիսի* հետ:

ՀԵԿԱՏԵՈՍ ՄԻԼԵԹԱՑԻ (Hekataies o Milesios, մ. թ. ա. մոտ 546–480), հույն պատմիչ, աշխարհագետ: Հեղինակ է «Ծագումնաբանություն» (գիրք 1–4) աշխ-յան, որը հույն դից. հերոսների տոհմագրությունն է: «Երկրագրություն»-ում (գիրք 1–2) նկարագրել է Եվրոպան և Ասիան, տվյալներ հաղորդել հնագույն ժամանակաշրջանում Հայկ. լ-աշխարհում ապրած ցեղերի մասին:

ՀԵԿԱՏՈՄԲ (< հուն. hekaton – հարյուր և boys – ցուլ), զոհաբերություն Հին Հունաստանում: Սկզբնապես հարյուր ցուլի, հետագայում՝ յուրաքանչյուր նշանակալի հաս. *զոհաբերություն*: Փխբ. իմաստով՝ պատերազմի, ահաբեկչության, համաճարակների մեծաթիվ զոհեր:

ՀԵԿԿԵԼ (Haeckel) Էռնստ Հենրիխ Ֆիլիպ Ավգուստ (1834–1919), գերմանացի կենսաբան-էվոլյուցիոնիստ, բնապատմ. մատերիալիզմի կողմնակիցը և տարածողը: Հեղինակ է «Օրգանիզմների ընդհանուր ձևաբանություն» (հ. 1–2, 1868), «Համաշխարհային հանելուկներ» (1899) հայտնի գրքերի: Առաջարկել է կենդ. աշխարհի առաջին տոհմածառը, բազմաբջիջ օրգանիզմների ծագման տեսությունը, ձևակերպել է կենսագենետիկ. օրենքը, առաջարկել է «պիտեկանտրոպ», «ֆիլոգենեզ» և «էկոլոգիա» եզրույթները:

ՀԵԿԿԵՐ (Hecker) Ֆրիդրիխ (1811–1881), գերմանացի ժողովրդավար. գործիչ: 1848–49-ի հեղ-յան ժամանակ հանդես է եկել Գերմանիայի ժողովրդավար. հանրապետության հռչակման օգտին: Եղել է Բադենի (1848-ի ապրիլին) հանրապետ. ապստամբության ղեկ-ներից: 1861–65-ի ԱՄՆ-ի Քաղաքաց. պատերազմի ժամանակ՝ Հյուսիսի զորքերի գնդ.:

ՀԵԿՏԱՐ, մակերեսի միավոր *չափերի մետրական համակարգում*. հավասար է 100 *ար* կամ 10000 *մ*²: Կրճատ նշանակվում է *հա*:

ՀԵԿՏՈ... (հուն.՝ hekaton – հարյուր), չափման միավորների հարյուրապատիկը ցույց տվող նախածանց: Կրճատ նշանակվում է *հ*: Գրվում է սկզբն. միավորի հետ, օր.՝ 1 *հՎտ* = 100 *Վտ*, 1 *հլ* = 100 *լ*:

ՀԵԿՏՈՐ, *Պրիամոսի* և *Հեկուբեի* որդին, *Անդրոմաքեի* ամուսինը, *Պարիսի* ավագ եղբայրը «Իլիականում»: Հուն. դից-յան մեջ հիշատակվում են Հ-ի բազմաթիվ սխրագործություններ: Երբ նա պարտության է մատնել Պատրոկլեսին, Աքիլլեսը վրեժխնդիր է եղել ընկերոջ համար և մենամարտում սպանել Հ-ին:

ՀԵԿՈՒԲԵ (Հեկաբա), Տրոյայի *Պրիամոս* արքայի կինը «Իլիականում», *Հեկտորի, Պարիսի, Կասանդրայի* մայրը: Տրոյայի պատերազմի ժամանակ կորցրել է ամուսնուն և գրեթե բոլոր երեխաներին, Տրոյայի անկումից հետո դարձել է Ոդիսևսի գերին, զոհվել է Հելեսպոնտոսով հետդարձի ժամանակ: Հ-ի կերպարը դաս. գրկ-յան (Էվրիպիդես, Ա. Դանտե, Վ. Շեքսպիր) մեջ դարձել է անսահման սուգի և հուսահատության մարմնացում:

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐ, հեղկոմներ, խորհրդ. իշխանության ժամանակավոր արտակարգ մարմիններ: Գործել են հիմնականում 1918–20-ին: Հ. կ-ի հիմն. պարտականությունն էր տեղերում հաստատել խորհրդ. կարգերի բնույթից և շահերից բխող կառավարման համակարգ, իրենց ձեռքում կենտրոնացնել քաղաքաց. և զինվ. ողջ իշխանությունը:

Հայաստանի հեղկոմը (նախագահ՝ Սարգիս *Կասյան*) ստեղծվել է 1920-ի նոյեմբ-ին: 1921-ի վերջին Հ. կ-ին փոխարինել են իշխանության տեղ. ընտրովի մարմինները՝ խորհուրդները:

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՏԻԲԵՐԻՆԱԼՆԵՐ, 1. արտակարգ դատարաններ Ֆրանս. մեծ հեղ-յան տարիներին: Ստեղծվել է 1792-ի օգոստ-ին՝ որպես ժամանակավոր դատարան, վերակառուցվել՝ 1793-ի մարտին: «Հ. տ.» անվանումն ստացել է Յակոբինյանների ժամանակ, երբ դարձել էր յակոբին. դիկտատուրայի հիմն. մարմիններից: Հ. տ-ի վճիռները վերջնական էին և անփոփոխելի, միակ պատժամիջոցը մահապատիժն էր: 1794-ի թերմիդորյան հեղաշրջումից հետո Հ. տ. դարձել են հակահեղ. ահաբեկչության մարմին: Վերացվել են 1795-ին: 2. Արդարադատության մարմիններ, որոնք գործել են խորհրդ. իշխանության 1-ին տարիներին (ստեղծվել են 1917-ի նոյեմբ. 22-ի՝ «Դատարանի մասին» դեկրետի համաձայն): Վերացվել են 1922-ին:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԻԿ, Յազգուլեմյան լ-շղթայի ամենաբարձր գագաթը Պամիրում: Բարձր.՝ 6974 *մ*:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, հաս-յան սոցիալ-քաղ. կյանքի արմատ. փոփոխություն: Բնութագրվում է նախորդող ավանդություններից կտրուկ հրաժարմամբ, հաս. պետ. ինստ-ների բռնի վերակազմավորմամբ՝ ի հակադրություն բարեփոխումների և սոցիալ. *էվոլյուցիայի*: Սոցիալ. հեղ-յունները միմյանցից տարբերվում են այն հաս. խմբով (դասակարգ), որը հանդես է գալիս որպես հեղ. գործողությունների գլխ. ուժ (գյուղաց., բուրժ., պրոլետ. հեղ-յուններ), ինչպես նաև իրականացման տարածական շրջանակով (ազգ., «համաշխարհային» ևն): Ի տարբերություն սոցիալ. հեղ-յան՝ իշխող խմբերի բռնի ձևերը՝ պետ. հեղաշրջումը, *պուտչը* ևն, հաս. կառուցվածքի արմատ. փոփոխություն չեն ենթադրում: «Հ. ս.» եզրույթը գործածվում է նաև համազգ. մասշտաբի ընդվզումների պարագայում՝ իրենց նախանշած նպատակներին չհասած՝ գոյատևող կարգի փոփոխության կարգախոսով:

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ, քաղաքաց. իրավունքի բաժին. կարգավորում է գրկ-յան, գիտ-յան և արվ-ի բնագավառներում հեղինակի ինքնուրույն կամ համահեղինակությամբ իրականացրած ստեղծագործ. աշխ-ի ստեղծման կամ օգտագործման հետ կապված իրավահարաբերությունները: Հեղինակային իրավունքների պաշտպանության խնդիրներով ՀՀ-ում զբաղվում է «Հայհեղինակ» (հիմն.՝ 2001) կազմ-յունը (տնօրեն՝ Սուսաննա Ներսիսյան):

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՎԿԱՅԱԳԻՐ, փաստաթուղթ, որով սահմանվում է գյուտի հայտնագործության ևն հեղինակին որպես հեղինակ ճանաչելու, պարգևատրման և այլ արտոնություններ տալու իրավունքը:

ՀԵՂԻՆԵ, լույսի, պտղաբերության, բուսականության աստվածուհին հուն. դից-յան մեջ: *Զևսի* և *Լետոյի* դուստրը, Սպարտայի արքա *Մենելայոսի* կինը: Հ-ին առևանգել է *Պարիսը*, որն էլ դարձել է Տրոյական պատերազմի պատճառ:

ՀԵՂՁՈՒԿ, ասթմա (հուն.՝ astma – հեղձուկ), շնչարգելության նոպաներ բրոնխների (բրոնխ. հեղձուկ), սրտի (սրտային հեղձուկ) ախտահարման ժամանակ, նաև շնչառ. ուղիներն օտար մարմիններ ընկնելիս:

ՀԵՂՈՒԿ, միջանկյալ *ագրեգատային վիճակ* նյութի պինդ և գազ. վիճակների միջև, որն օժտված է ինչպես *պինդ մարմինների*, այնպես էլ *գազերի* առանձին հատկություններով, ինչպես նաև միայն իրեն բնորոշ հատկություններ, որոնցից ամենաբնութագրականը հոսունությունն է: Հ-ները պահպանում են իրենց ծավալը, ունեն ազատ մակերևույթ, սակայն չեն պահպանում ձևը: Նյութը Հ. վիճակում լինում է եռակի կետին բնորոշ ճնշումից բարձր ճնշումների դեպքում և բյուրեղացման ջերմաստիճանից մինչև եռման ջերմաստիճանն ընկած տիրույթում: Հ-ի՝ գազերից տարբերվող կարևոր առանձնահատկություններից է ուժեղ *միջմոլեկուլային փոխազդեցությունը*, որով պայմանավորված են Հ-ի մոլ. ճնշումը և դրա հետ կապված մակերևութ. լարվածությունը:

ՀԵՂՈՒԿ ԱՊԱԿԻ, նատրիումի կամ կալիումի սիլիկատի ջր. լուծույթը: Օգտագործվում է թթվակայուն ցեմենտներ, սիլիկատ. ներկանյութեր ևն ստանալու համար:

ՀԵՂՈՒԿ ԲՅՈՒՐԵՂՆԵՐ, քիմ. միացություններ, որոնք իրենց կառուցվածք. հատկություններով միջանկյալ տեղ են գրավում պինդ բյուրեղների և ամորֆ հեղուկների միջև: Այդ հատկություններից կարևորագույններն են դիէլեկտրիկ. և օպտիկ. *անիզոտրոպությունը*: Հ. բ. բաղկացած են միմյանց նկատմամբ որոշակի կարգով դասավորված շարժուն մոլ-ներից: Արտաքին ազդեցություններից Հ. բ-ի հատկությունների ունեցած ուժեղ կախվածության շնորհիվ՝ այդ միացությունները լայնորեն կիրառվում են տեխնիկայում (ջերմաստիճան. տվիչներ, լույսի *մոդուլյատորներ* ևն):

ՀԵՂՈՒԿ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ, հանք. նյութերի լուծույթներ, որոնք պարունակում են բույսերի հիմն. սննդատարրերը: Ազոտային (ամոնիակաջուր, հեղուկ ամոնիակ, ամոնիակատներ) և բարդ Հ. պ. (պարունակում են N, P_2O_5 և K_2O) օգտագործվում են տարբեր հողերում գղտ. տարբեր մշակաբույսերի համար:

ՀԵՂՈՒԿԱՀԱՐԹԻՒԱՅԻՆ ՇԱՐԺԻՉ, հեղուկ վառելիքով աշխատող քիմ. *հրթիռային շարժիչ*: Հեղուկ վառելիքը հիմնականում կազմված է օքսիդիչից (թթվածին, ազոտի օքսիդներ ևն) և վառելանյութից (ջրածին, ածխաջրածիններ ևն): Որպես վառելիք կարող է օգտագործվել նաև կատալիզային քայքայման ենթարկվող հեղուկը, օր.՝ *հիդրազինը*:

ՀԵՂՈՒԿԱՅԻՆ ԼԱԶԵՐ, լազեր, որի ակտիվ միջավայրը հեղուկ է (հազվագյուտ տարրերի խելատների, օրգ. ներկանյութերի լուծույթներ): Ներկանյութերի վրա Հ. լ–ով հնարավոր է ճառագայթման ալիքների երկ–յան անընդհատ վերակառուցում, դրանք կիրառում են լազեր. սպեկտրադիտման մեջ: Անօրգ. հեղուկների վրա Հ. լ–ները, ըստ տեսակարար հզորության և էներգիայի, գերազանցում են նույնիսկ պինդ մարմն. լազերը:

ՀԵՂՈՒԿԱՅԻՆ ՋԵՐՄԱՉԱՓ, ջերմաստիճանի չափման գործիք, որի գործողությունը հիմնված է հեղուկի ջերմ. ընդարձակման վրա: Կախված ջերմաստիճան. տիրույթից՝ Հ. ջ–ի մեջ լցնում են սպիրտ (–80–ից մինչև +80 °C), անդիկ (–35–ից մինչև + 750 °C) ևն: Հ. ջ–ներ են սենյակ. *ապիրտային ջերմաչափը*, բժշկ. *անդիկային ջերմաչափը* ևն:

ՀԵՂՈՒԿԱՅԻՆ ՔՐՈՄԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ, *քրոմատագրության* տեսակ, որտեղ շարժվող ֆազը (էլյուենտ) հեղուկ է: Հ. ք–յան հիմն. եղանակներն են՝ ադսորբման, իոնափոխանակային, խնամակցական, լիգանդափոխանակային, քիրիալային: Հ. ք–յան ժամանակակից տարբերակներն են՝ բարձրարդյունավետ, հակահոս, թաղանթ., բարձրջերմաստիճան., շրջապտուտ., բազմաչափ: Օգտագործում են կենսատեխնոլոգիայում, կենսբ–յան, բժշկության, դեղագործության, դատաբժշկ. փորձագիտ–յան մեջ, շրջակա միջավայրի ու արդ. արտանետումների, տեխնոլոգ. շարժընթացների և արտադրանքի որակի հսկման, նյութերի անջատման և մաքրման համար:

ՀԵՂՈՒՅՍ, ամրակման դետալ. սովորաբար՝ գլխիկով և ողջ երկ–յամբ կամ մի մասով պարուրակված գլանաձև ձող: Օգտագործվում է մեքենամասերի երկատվող միացումների համար: Հ–ի վրա պտուտակելով հագցվում է *մանեկը*:

ՀԵՄ (հուն.՝ aima), պորֆիրինի ածանցյալների կոմպլեքս միացություն՝ երկաթի (II) իոնով: Պարզ խմբի ձևով մտնում է բարդ սպիտակուցների հեմոպրոտեինների, այդ թվում՝ ցիտոքրոմների, հեմոգլոբինների, միոգլոբինի բաղադրության մեջ:

«ՀԵՄ», գր–հաս. եռամսյա հանդես (1940–ից, Երուսաղեմ, 1946–77–ին ընդհատվել է): ՀԵՄ–ի պաշտոնաթերթն է:

ՀԵՄԱԳԼՈՒՏԻՆԱՅՈՒՄ (< *հեմո*... և լատ.՝ agglutinatio – սոսնձում), արյան էրիթրոցիտների միմյանց կպչելու (սոսնձվելու) և նստման շարժընթաց. առաջանում է էրիթրոցիտների մակերեսին ադսորբվելու հատկությամբ օժտված հեմագլուտինիներով, բակտերիաներով և վիրուսներով: Հ–ման ռեակցիայի վրա են հիմնված արյան փոխներարկման խմբերի որոշման օրինաչափությունները:

ՀԵՄԱՏԻՏ (հուն.՝ hematos – արյուն), **արյունաքար**, երկաթի փայլ, կարմիր երկաթաքար, երկաթի լայնորեն տարածված միներալ՝ Fe_2O_3: Պարունակում է մինչև 70 % երկաթ: Առաջացնում է թիթեղաձև, ռոմբոեդրիկ, սակավ՝ պրիզմաձև բյուրեղներ: Սև է, փայլը՝ կիսամետաղ.: Կարծր.՝ 5–6, խտ.՝ 5256 *կգ/մ³*: Հանդիպում է մետամորֆոգենն, ջրաջերմ., սկառնային հանքավայրերում և երկաթով հարուստ տարբեր տիպերի ապարներում: Հ. երկաթի կարևոր հանքանյութ է:

ՀԵՄԱՐԹՐՈՋ (< *հեմո*... և arthron – հոդ), հոդի արյունազեղում (առավել հաճախ՝ ծնկի) խոռոչում:

ՀԵՄԻ..., բարդ բառերի սկզբնամաս. նշանակում է կես, կիսա... (օր.՝ հեմիպլեգիա՝ կիսալուծանք):

ՀԵՄԻՆԳՈՒԵՅ (Hemingway) Էռնստ Միլլեր (1899–1961), ամերիկացի գրող: «Եվ ծագում է արևը (Ֆիեստա)» (1926, հայ.՝ 1985) վեպում պատկերել է հետպատերազմ. «ծաղկուն» տարիների *«կորուսյալ սերնդի»* հոգու ցավը, հիասթափությունն ու հուսահատությունը: Հ–ին հռչակ է բերել «Հրաժեշտ զենքին» (1929, հայ.՝ 1972) հակապատերազմ. թեմայով վեպը, որտեղ արտացոլել է կամավոր պատերազմ մեկնած երիտասարդ ամերիկացու հոգեկան ճգնաժամը, խեղված ճակատագիրը, սիրո պատմությունը: «Ում մահն է գուժում զանգը» (1940, հայ.՝ 1985) վեպում սիրո պատմությունը միահյուսված է Իսպանիայի քաղաքաց. պատերազմի (1936–39) թեմային: Հեղինակ է նաև «Անպարտելին» (1925), «Ֆրենսիս Մաքոմբերի երջանկությունը» (1936), «Կիլիմանջարոյի ձյունները» (1936, հայ.՝ 1963) պատմվածքների, «Տղամարդիկ առանց կանանց» (1927), «Հաղթողը ոչինչ չի ստանում» (1933) պատմվածքների ժող–ների, «Մահ կեսօրից հետո» (1932) աշխ–յան, «Աֆրիկայի կանաչ բլուրները» (1935) ինքնակենսագր. վիպակի, «Ունենալ և չունենալ» (1937, հայ.՝ 2006), «Գետից այն կողմ՝ ծառերի ստվերում» (1950) վեպերի: Մարդու նկատմամբ հավատը գրողն ամրապնդել է «Ծերունին և ծովը» (1952, հայ.՝ 1957) վիպակ–առակում: Հ. փոքր, կարճ պատմվածքների վարպետ է: «Մեր ժամանակներում» (1925) պատմվածքների ժող–ի 2–րդ հրտ–յան մեջ (1930) ավելացրել է «Զմյուռնիայի նավահանգստում» նախաբանը, որտեղ պատկերել է 1922–ի հույն–թուրք. պատերազմի ժամանակ թուրքերի կազմակերպած հայերի և հույների կոտորածը:

Հ., ապրելով խոր ճգնաժամ, ինքնասպան է եղել:

Հ–ի գործերից հայ. թարգմանել են Պ. Զեյթունցյանը, Վ. Միքայելյանը և ուր.: Հայ. հրատարակվել են նաև «Տուն, որը միշտ քեզ հետ է» (1966), «Այնտեղ, ուր մաքուր է և լուսավոր» (2006) պատմվածքների ժող–ները: Հ–ի երկերի հիման վրա նկարահանվել են մի շարք ֆիլմեր:

Պուլիցերյան (1953), Նոբելյան (1954) մրց–ներ:

ՀԵՄԻՕՊԻՍ (< *հեմի*... և հուն.՝ ops – աչք), աչքի տեսադաշտի կիսումը *հեմիանօպսիայի* ժամանակ: Օր.՝ տեսադաշտի աջ կեսի անկումով (աջակողմյան հեմիանօպսիայով) աչքն ունենում է ձախակողմյան Հ.:

ՀԵՄՈ..., հեմատո... (< հուն. haima, սեռ. հող.՝ hematos – արյուն), բարդ բառերի սկզբնամաս. օգտագործվում է արյանն առնչվող եզրույթներում:

ՀԵՄՈԳԼՈԲԻՆՆԵՐ (< *հեմո*... և լատ.՝ globus – գունդ), մարդու, ողնաշարավոր և որոշ անողնաշար կենդանիների արյան շնչառ. կարմիր գունակներ: Կազմված են սպիտակուցից (գլոբին) և երկաթպորֆիրինից (հեմ): Թթվածինը շնչառ. օրգաններից տեղափոխում են հյուսվածքներ և մասնակցում ածխաթթու գազի՝ հակառակ ուղղությամբ տեղափոխմանը: Մասնակցում են արյան pH–ի պահպանմանը: Արյան 100 *մլ*–ում պարունակում է 12–16 *գ* Հ.: Արյան բազմաթիվ հիվանդություններ (սակավարյունություններ) պայմանավորված են Հ–ի կառուցվածքի խանգարումներով (այդ թվում՝ ժառանգ.):

ՀԵՄՈԳԼՈԲԻՆՈՊԱԹԻԱ, հեմոգլոբինոզ, ժառանգ. հիվանդությունների խումբ՝ պայմանավորված էրիթրոցիտներում արատավոր հեմոգլոբինի առկայությամբ: Հիմն. նշանն արյունատարալուծումն է (*հեմոլիզ*): Տես *Մանգաղաձևաբջջային սակավարյունություն*:

ՀԵՄՈԳԼՈԲՈՒՆՈՒՐԻԱ (< *հեմոգլոբին* և հուն.՝ uron – մեզ), հեմոգլոբինի առկայությունը մեզի մեջ: Ախտանշանները՝ ներանոթ. արյունատարալուծումը որոշ թունավորումների, *արյունալուծական սակավարյունության*, վարակիչ հիվանդությունների ժամանակ, որպես արյան փոխներարկման բարդություն, սառեցման ազդեցության տակ, երկարատև քայլքի (պարոքսիզմային Հ.) և այլ դեպքերում:

ՀԵՄՈԴԻԱԼԻԶ (< *հեմո*... և հուն.՝ dialysis – բաժանում), սուր և քրոնիկ. *երիկամային անբավարարության* բուժումը «արհեստական երիկամ» ապարատի օգնությամբ:

ՀԵՄՈԴԻՆԱՄԻԿԱ, արյան շարժումն արյունատար անոթներով՝ պայմանավորված արյունատար համակարգի տարբեր հատվածներում հիդրոդինամիկ ճնշման տարբերությամբ: Հ–ի մասին կարծիք են կազմում ըստ սրտի րոպեական ծավալի:

ՀԵՄՈԹՈՐԱՔՍ (< *հեմո*... և հուն.՝ thorax – կուրծք), արյան կուտակումը կրծքամզի խոռոչում՝ վնասվածքների ժամանակ ներքին արյունահոսության կամ (հազվադեպ) թոքերի քաղցկեղի, տուբերկուլոզի և այլ հիվանդությունների դեպքում: Ոչ մեծ Հ. դրսևորվում է կրծքի շրջանի ցավերով, հազով, ածածավալման դեպքում առաջանում են շնչարգելություն, կապտախտ, սրտի գործունեության խանգարումներ:

ՀԵՄՈԼԻԶ, տես *Արյունալուծում*:

ՀԵՄՈՊՐՈՏԵԻԴՆԵՐ, գունավոր բարդ սպիտակուցներ. հեմի ոչ սպիտակուց. բաղադրամասը: Հ. են հեմոգլոբինը, միոգլոբինը, որոշ օքսիդացնող ֆերմենտներ:

ՀԵՄՈՍՊՈՐԻԴԻՈՒՄՆԵՐ, արյան սպրավորներ, սպորավորների դասի նախակենդանիների կարգ: Հայտնի է ավելի քան 100 տեսակ: Մակաբուծվում են ողնաշարավոր կենդանիների և մարդու էրիթրոցիտներում կամ էնդոթելի բջիջներում: Հ. են *պլազմոդիումները*:

ՀԵՄՈՖԻԼԻԱ, ժառանգ. հիվանդություն, որը պայմանավորված է արյան մակարդելիության համակարգի անբավարարությամբ և արտահայտվում է արյունահոսականությամբ (տես *Արյունահոսական նախապրամադրվածություն*): Հիվանդանում են հիմնականում տղամարդիկ, իսկ կանայք՝ միայն մուտանտային գենների կրողներն ու որդիներին փոխանցողներն են:

ՀԵՄՊԵԼ (Hempel) Կառլ Գուստավ (1905–1997), գերմանացի փիլ.: 1937–ից՝ ԱՄՆ–ում: Մշակել է տրամաբ. պոզիտիվիզմի ծրագիր և գիտ–յան մեթոդների ու գոր–

ծողությունների ձևային մոդելներ: Աշխ-ները վերաբերում են հավանականութ-յան տեսության տրամաբ. խնդիրներին, պատմ. օրենքներին:

ՀԵՄՊՏՈՆ ԿՈՐՏ (Hampton Court), թագավոր. պալատ և թանգարան Լոնդոնում: Մասնաշենքերը թյուդորյան (XVI դ–ի 1–ին կես) և կլասիցիզմի (XVII դ–ի վերջ–XVIII դ–ի սկիզբ, ճարտ՝ Կ. Ռեն և ուր.), մատուռը (XVI դ.) գոթ. ոճերով են, ինտերիերները՝ XVIII դ–ի սկզբից: Ունի նաև զբոսայգի (XVIII–XX դդ.)՝ լաբիրինթոսով (XVII դ–ի վերջ):

ՀԵՄՓ (Hamp) Էրիկ Պրատ (ծ. 1920), ամերիկացի լեզվաբան: Ուսումնասիրել է հնդ., կելտ. լեզուները, վերջիններիս բարբառները: Կազմել է «Ամերիկյան լեզվաբանական տերմինաբանության բառարան»:

ՀԵՄՓՇԻՐՅԱՆ ՈՋԽԱՐ, մսաբրդատու ցեղ: Ստացվել է Անգլիայում՝ Հեմփշիր, Ուիլտշիր և այլ կոմսություններում XIX դ–ի 1–ին կեսին: Խոյերի կ. զ՝ 90–110, մաքիներինը՝ 65–75 *կգ*, բրդատվությունը, համապատասխանաբար՝ 5–6 և 3–4 *կգ*:

ՀԵՅԲԵՐԳ Յոհան Լյուդվիգ (1791–1860), դանիացի գրող, քննադատ: 1849–56–ին՝ Կոպենհագենի թատրոնի տնօրեն: Հեղինակ է «Սողոմոն կայսրը և գլխարկ կարող Յորգենը» (1925) երգիծ. վոդևիլների, «Էլֆերի բլուրը» (1828), «Պատրանք» (1838) ռոմանտիկ. դրամաների, նաև բանաստեղծությունների:

ՀԵՅԳ (Haig) Դուգլաս (1861–1928), բրիտանացի ռազմ. գործիչ, ֆլդմ. (1917): ԱՀՊ–ի ժամանակ եղել է կորպուսի, բանակի, 1915–ի դեկտ–ից՝ Ֆրանսիայում անգլ. էքսպեդիցիոն զորքերի հրամ.:

ՀԵՅԴԵՆ (Hayden) Ռոբերտ Էջլ (1913–1980), աֆրոամերիկացի բանաստեղծ: Հեղինակ է «Սրտի դրոշմ փոշու մեջ» (1940), «Առյուծը և նետաձիգը» (1948), «Ընտրանի» (1966) ժող–ների, «Վերելքի անկյուն» (1975) երկի, որը Ամերիկայի սևամորթ քաղաքացիների հոգևոր պատմության տարեգրությունն է:

ՀԵՅԴԵՆՍՏԱՄ (Heidenstam) Կառլ Գուստավ Վեռներ ֆոն (1859–1940), շվեդ գրող: Հեղինակ է «Ռենեսանս» (1889) նեոռոմանտիզմի գր. հրովարտակի, «Ուխտազնացություն և թափառումների տարիներ» (1900) բանաստեղծությունների ժող–ի, «Հանս Ալիենուս» (1892) վեպի, «Կառլ XII–ի զինվորները» (հ. 1–2 1897–98) պատմահայրենասիր. պատմվածաշարի:

Նոբելյան մրց. (1916):

ՀԵՅԴՐԻԽ (Heydrich) Ռեյնհարդ (1904–1942), Գերմանիայի քաղ. ոստիկանության պետ՝ 1936–ից: Կազմակերպել է Չեխոսլովակիայի խաղաղ բնակչության զանգված. ոչնչացումը:

ՀԵՅԵՐԴԱԼ (Heyerdahl) Թուր (1914–2002), նորվեգացի ազգագրագետ, հնագետ, ճանապարհորդ, գրող: Պոլինեզիայի՝ ամերիկացիներով բնակեցված լինելու մասին իր տեսակետն ապացուցելու համար 1947–ին 5 ուղեկիցների հետ 101 օրում լաստանավով անցել է Պերուից մինչև Պոլինեզիա: 1969–ին և 1970–ին 2 պապիրուսե («Ռա») նավակներով Մարոկկոյի արմ. ափերից հասել է Բարբադոս կղզի: 1977–78–ին նավարկել է «Տիգրիս» նավով՝ արշավելով Էլ–Կուռնա (Իրաք)–Ինդոս–Ջիբութի երթուղով: Հեղինակ է «Կոն–տիկի» (1949), «Ակու–ակու» (1957), «Ռա» (1970), «Ֆանտու–Խիվա» (1975) և այլ գրքերի:

ՀԵՅԵՐՄԱՆՍ (Heijermans) Հերման (Սամուել Ֆալկլանդ, 1864–1924), նիդեռլանդացի գրող: Նատուրալիզմի խոշորագույն ներկայացուցիչ նիդեռլանդ. գրկ–յան մեջ: 1897–1901–ին՝ «Դե Յոնգ Գիդս» (նիդեռլանդ.) հանդեսի հիմնադիր–խմբ.: Հեղինակ է «Ադամանդների քաղաքը» (1904) սոցիալ–քննադատ. վեպի, «Գետտո» (1899), «Յոթերորդ պատվիրանը» (1900), «Գլյուքաուֆ» (1911) և այլ պիեսների:

ՀԵՅԶ (Haies) Ֆրեդ Ուոլլես (ծ. 1933), ամերիկացի աստղագնաց–ճարտարագետ: Թռել է Լուսին «Ապոլոն–13» տիեզերանավով (1970–ի ապրիլ):

ՀԵՅԶԵ (Heyse) Պաուլ (1830–1914), գերմանացի գրող: Մյունխենյան խմբակի (1860–80) հիմնադիրը: Հեղինակ է «Դարի զավակները» (1873), «Դրախտում» (1875) և այլ վեպերի, նաև հոգեբ. նովելների (24 հատոր), պիեսների, բանաստեղծությունների: Նոբելյան մրց. (1910):

ՀԵՅԶԵՆԲԵՐԳ (Heisenberg, Հայզենբերգ) Վեռներ Կառլ (1901–1976), գերմանացի ֆիզիկոս–տեսաբան, ***քվանտային մեխանիկայի*** հիմնադիրը: 1941–ից՝ Բեռլինի և Գյոթինգենի, 1955–ից՝ Մյունխենի ֆիզիկայի ինստ–ների տնօրենը: 1925–ին Ն. *Բորի* հետ մշակել է ***մատրիցային մեխանիկան***՝ քվանտ. մեխանիկայի 1–ին տարբերակը: Կատարել է հելիումի ատոմի քվանտամեխ. հաշվարկը, ցույց տվել 2 տարբեր վիճակներում նրա գոյության հնարավորությունը: Չնակերպել է անորոշությունների առնչությունները (1927), ներմուծել ցրման մատրիցի հայեցակարգը (1943): Աշխ–ներ ունի նաև ատոմի միջուկի կառուցվածքի (բացահայտել է նուկլոնների փոխազդեցության փոխանակ. բնույթը), ռելյատիվիստ. քվանտ. մեխանիկայի, դաշտի միասն. տեսության վերաբերյալ: Նոբելյան մրց. (1932):

ՀԵՅԼ (Hale) Ջորջ Էլերի (1868–1938), ամերիկացի աստղագետ: Ֆրանսիայի (1919), ՌԽՖՍՀ (1924) և ԽՍՀՄ (1925) ԳԱ–ների արտ. թղթ. անդամ: Յորքի (1895–05) և ***Սիաունթ Վիլսոնի*** (1904–23) աստղադիտարանների հիմնադիր–տնօրեն: Ստեղծել է ***սպեկտրոհելիոգրաֆը***, հայտնաբերել արևաբծերի մագնիս. դաշտը (1908): Նրա անունով կոչվել են աստղադիտարաններ Կալիֆոռնիայում:

ՀԵՅԼԻ (Hailey) Արթուր (1920–2004), ամերիկացի գրող: 1952–ից՝ Կանադայում: Հեղինակ է «Հյուրանոց» (1965), «Օդանավակայան» (1968, հայ.՝ 1974), «Գերբեռնվածություն» (1979), «Ուժեղ ազդող դեղամիջոցը» (1984) վեպերի (բեստսելլերներ), նաև «Երեկոյան նորություններ» (1990) սուրսյուժետ. վեպի:

ՀԵՅԼԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆՆԵՐ, աստղադիտարանների խումբ Կալիֆոռնիայում (ԱՄՆ), որոնք 1948–ից համատեղ ղեկավարում են Կառնեգիի և Կալիֆոռնիայի տեխնոլոգ. ինստ–ները: Ավելի վաղ Հ. ա. անվանվել են ***Սիաունթ Վիլսոնի*** և ***Սիաունթ Պալոմարի աստղադիտարաններ***: Վերանվանվել է Ջ. *Հեյլի* անունով (1970):

ՀԵՅԼՈՒՆՅԱՆ, պրովինցիա Չինաստանի հս–արլ–ում: Տարածքը՝ 469 հզ. *կմ²*, բն.՝ 38 մլն (2013): Վարչ. կենտրոնը՝ *Հարբին*:

ՀԵՅՄ (Heym) Ստեֆան (1913–2001), գերմանացի հրեա գրող: Գրել է նաև անգլ.: 1933–52–ին՝ վտարանդի: Հեղինակ է հակաազգ. թեմայով «Խաչակիրներ» (1948, հայ.՝ 1952), բռնակալ. ռեժիմի, հատկապես՝ ստալինիզմի սուր քննադատությամբ առանձնացող «Դավիթ արքայի գիրքը» (1972), 1953–ի Բեռլինի դրամատիկ. իրադարձությունների մասին «Հինգ օր հունիս ամսին» (1974), «Շվարցենբերգ» (1984), «Սահախոսական» (1988), «Ճարտարապետները» (2000) վեպերի:

Հ. Մանի (1953), ԳԴեմՀ Ազգ. (1959), Երուսաղեմի (1993) մրց–ներ:

ՀԵՅՄԱՆՍ (Heymans) Կոռնել (1892–1968), բելգիացի ֆիզիոլոգ և դեղաբան: Բացահայտել է քներակային ծոցերի և աորտայի քեմորնկալիչների դերը շնչառության ու արյան շրջանառության կարգավորման մեջ: Նոբելյան մրց. (1938):

ՀԵՅՆԵՍԵՆ (Heinesen) Ուիլյամ (1900–1991), դանիացի գրող: Հեղինակ է «Նոատուն» (1938) սոցիալ–քննատատ., «Սև կաթսա» (1949), «Կորած երաժիշտները» (1950) վեպերի, նաև բանաստեղծությունների: «Բարի հույս» (1964) պատմավեպում պատկերել է կյանքը Ֆարերյան կղզիներում:

ՀԵՅՆԵ–ՎԱԳՆԵՐ (Heine–Vagnere) Ժերմենա Լեոպոլդ (ծ. 1923), լատիշ երգչուհի (քնարադրամատիկ. սոպրանո): Լատվ. ԽՍՀ (1957), ԽՍՀՄ (1969) ժող. արտիստ: 1950–75–ին՝ Լատվիայի ՕԲԹ–ի մենակատարուհի (Աիդա, Լեոնորա՝ Ջ. Վերդիի «Աիդա», «Տրուբադուր», Արքայադուստր Տուրանդոտ՝ Ջ. Պուչչինիի «Տուրանդոտ», Սալոմե՝ Ռ. Շտրաուսի «Սալոմե», ևն):

Լատվ. ԽՍՀ Պետ. (1957), Լատվիայի երաժշտ. Մեծ (2001) մրց–ներ:

ՀԵՅՍ (Heuss) Թեոդոր (1884–1963), ԳԴՀ–ի նախագահ՝ 1949–59–ին: 1948–49–ին՝ Ազատ դեմոկրատ. կուս–յան նախագահ:

ՀԵՅՍ (Hayes) Ռաթերֆորդ Բյուրչարդ (1822–1893), ԱՄՆ–ի 19–րդ նախագահ՝ 1877–81–ին՝ Հանրապետ. կուս–յունից:

ՀԵՅՍՏԻՆԳՍ (Hastings) Ուորեն (1732–1818), Հնդկաստանի 1–ին գեն–նահանգապետ՝ 1774–85–ին: Իրականացրել է գաղութ–նվաճող. քաղ–յուն, թալան ևն: Հ–ի նկատմամբ դատավարությունն Անգլիայում (մեղադրվել է դաժանության և կոռուպցիայի մեջ) շարունակվել է 8 տարի (1788–ից): Դատարանն արդարացրել է Հ–ի գործողությունները: Դատ. գործի նյութերը կարևոր աղբյուր են Մեծ Բրիտանիայի՝ Հնդկաստանի գաղութացման պատմության վերաբերյալ:

ՀԵՅՎՈՒԴ (Heywood) Ջոն (մոտ 1497–մոտ 1580), անգլիացի բանաստեղծ և դրամատուրգ: Միջերգներում անհատականացրել է հերոսների խառնվածքները: Հեղինակ է «Չորս Պ» (1569) կատակերգ. տեսարանի, նաև էպիգրամների և առածների ժող–ի (1562):

ՀԵՅՎՈՒԴ Ուիլյամ Դադլի (1869–1928), «Աշխարհի արդյունաբերական բանվորներ» ամերիկ. արհմիութ. կազմ–յան առաջնորդը: 1921–ից՝ ԽՍՀՄ–ում:

ՀԵՅՐՈՎՍԿԻ (Heyrovský) Յարոսլավ (1890–1967), չեխ քիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1966): Հայտնագործել է ***բևեռագրությունը***, նախագծել է 1–ին բևեռագրիչը (1925, Մ. *Շիկատոյի* հետ):

Նոբելյան մրց. (1959):

ՀԵՅՈՒՈՐԹ (Hayworth) Ռիտա (1918–1987), ամերիկացի կինոդերասանուհի, պարուհի: 1940–ական թթ–ի Հոլիվուդի ճանաչված «աստղերից» է: Նկարահանվել է «Ֆիեստա», «Միայն հրեշտակներն ունեն թևեր», «Արյուն և ավազ», «Ջիլդա», «Երջանիկ հափշտակիչները», «Ճանապարհ դեպի Սելինա», «Կարմենի սիրային ար-

կածները», «Մանհեթենի հեքիաթները» և այլ ֆիլմերում:

ՀԵՅՖԵՑ (Heifetz) Յաշա (Իոսիֆ, 1899/1901–1987), հրեա ջութակահար: 1917-ից՝ ԱՄՆ-ում: Ջութակի ռուս. դպրոցի ներկայացուցիչ: Երկացանկում՝ դաս. և արդի գործեր: Աշակել է Ա. Խաչատրյանի «Սուսերով պարը» և «Այշեի պարը»՝ «Գայանե» բալետից, կատարել է փոխադրումներ ջութակի համար ևն:

ՀԵՅՖՈՐԴ (Hayford) Ջոն Ֆիլմոր (1868–1925), ամերիկացի գեոդեզիստ: 1906–09-ին կատարել է ԱՄՆ-ի աստիճանային չափումների մշակումները և որոշել է երկրային էլիպսոիդի չափերը (1924-ին ընդունվել է որպես միջազգ., սակայն լայնորեն չի կիրառվել):

ՀԵՆԱՆ, պրովինցիա Կենտր. Չինաստանում: Տարածքը՝ 167 հզ. *կմ*², բն.՝ 94 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ *Չժենչժոու*:

ՀԵՆԴԵՐՍՈՆ (Henderson) Արթուր (1863–1935), Մեծ Բրիտանիայի Էդյբորիստ. կուս-յան առաջնորդներից, 1929–31-ին՝ ՍԳ նախարար: 1932–33-ին՝ Զինաթափման միջազգ. համաժողովի նախագահ:

Խաղաղության Նորելյան մրց. (1934):

ՀԵՆԶԵԼՄԱՆ (Henselmann) Հերման (1905–1995), գերմանացի ճարտ.: Հեղինակ է Արլ. Բեռլինի զարգացման (1953–59), Գդեռհ-ի քաղաքների վերակառուցման (1966–72), խորհրդ. նորդաս. «Ստալին-ալլե» (այժմ՝ Ֆրանկֆուրտեր-ալլե, Բեռլին, 1952–58) և *մոդեռնիզմի* (Լայպցիգի համալսարան՝ բաց գրքի տեսքով, 1968–72) ոճով կառույցների նախագծերի:

ՀԵՆԻՈՆԵՐ, հենիոքներ (լատ.՝ Heniochi), հնագույն ցեղեր. ապրել են Սև ծովի հս. ափին: Առաջինը հիշատակվել են ուրարտ. արձանագրություններում (մ. թ. ա. VIII դ.), հետագայում՝ հունա-հռոմ. աղբյուրներում (Տակիտոս, Դիոն Կասսիոս): Մ. թ. ա. 63-ին կցվել է Պոնտոս պրովինցիային: Մ. թ. I դ–ից Հ., Հռոմի դրդմամբ, պարբերաբար արշավել են Հայաստան և նրա հարևան երկրներ:

ՀԵՆՅԱՆ, ք. Չինաստանի Հունան պրովինցիայում, նվիկզատ Սյանցզյան գետի ափին: Բն.՝ շուրջ 1 մլն (2010): Բազմամետաղ. հանքանյութի արդյունահանման կենտրոն է:

ՀԵՆՇ (Hänsch) Թեոդոր Վոլֆգանգ (ծ. 1941), գերմանացի ֆիզիկոս: Աշակել է (Ջ. *Հոլլի* հետ) լուս. շեղման ճշգրիտ հաշվարկման մեթոդ օպտիկ. ստանդարտ հաճախություններում (այսպես կոչված՝ օպտիկ. հաճախային սանր):

Նոբելյան մրց. (2005, Ջ. Հոլլի հետ):

ՀԵՆՈԶԻՍ (հուն.՝ henosis), ազատագր. շարժում Օսմ. կայսրության բռնագրաված հուն. տարածքներում՝ Հունաստանին վերամիավորվելու համար: Սկսվել է Հունաստանի անկախացումից (1830) հետո՝ նրա հովանավորությամբ:

ՀԵՆՈՅ, 1. (տեխ.) մեքենայի իրանի անշարժ հիմնամասը, որի վրա տեղակայվում և տեղաշարժվում են նրա աշխ. հանգույցներն ու մեխանիզմները: 2. (Ռազմ.) հիմնամաս, որի վրա ամրացվում են հրանոթը, գնդացիրը:

ՀԵՆՉ (Hench) Ֆիլիպ Շոուոլտեր (1896–1965), ամերիկացի բժիշկ: Ռևմատիզմի բուժման համար առաջինն է օգտագործել մակերիկամի կեղևի հորմոնը: Նոբելյան մրց. (1950, Է. *Քենդալի* և Տ. *Ռեյխշտեյնի* հետ):

ՀԵՆՐԻ (Henri, Անրի Ալբեր Գաբրիել Ֆելիքս Մարի Գիյոմ, ծ. 1955), Նասսաուի հերցոգ, Բուրբոն-Պարմի արքայազն, Լյուքսեմբուրգի մեծ հերցոգ՝ 2000-ից:

ՀԵՆՐԻ (Henry) Ջոզեֆ (1797–1878), ամերիկացի ֆիզիկոս: Կառուցել է հզոր էլ. մագնիսներ և էլ. շարժիչ, հայտնաբերել (1832, Մ. *Ֆարադեյից* անկախ) ինքնաինդուկցիան, բացահայտել կոնդեսատորի լիցքաթափման տատանող. բնույթը: Սմիթսոնի ինստ-ի 1-ին տնօրենը (1846), ԱՄՆ ազգ. ԳԱ նախագահ (1868-ից): Նրա անունով՝ *Հ* (Հենրի) է կոչվել ինդուկտիվության միավորը ՄՄՀ-ում:

ՀԵՆՐԻ Ուիլյամ (1774–1836), անգլիացի քիմիկոս-բժիշկ: Հաստատել է հեղուկում գազի լուծելիության և նրա ճնշման միջև ուղիղ համեմատական կախումը (Հենրիի օրենք): Ժանտախտի համաճարակի ժամանակ (1831) առաջարկել է հագուստը տաքացնելով ախտահանելու եղանակ:

ՀԵՆՐԻ (Ջ. *Հենրիի* անունով), *ինդուկտիվության* և փոխադարձ ինդուկտիվության միավորը ՄՄՀ-ում: 1Հ = 1Վ · վ/Ա = 1Վբ/Ա = 10^9 *սմ* = 1,11 · 10^{-12} ՍԳՎ միավոր:

ՀԵՆՐԻ I (Henry, 1068–1135), Անգլիայի թագավոր՝ 1100-ից: *Վիլհելմ I Նվաճողի* կրտսեր որդին:

ՀԵՆՐԻ II Պլանտագենետ (Հենրի Անժուացի, 1133–1189), Անգլիայի թագավոր՝ 1154-ից: Պլանտագենետների հարստության 1-ին ներկայացուցիչը: Իրականացրել է թագավոր. իշխանությունն ուժեղացնող բարենորոգումներ:

ՀԵՆՐԻ III (1207–1272), Անգլիայի թագավոր՝ 1216-ից՝ Պլանտագենետների հարստությունից: Փորձել է երկիրը կառավարել օտարերկրյա ֆեոդալների և հռոմ. եկեղեցու հետ դաշնակցած, որով իր դեմ է հանել բարոններին ու նրանց աջակցող ասպետներին, քաղաքացիներին և ունևոր գյուղացիությանը (տես *Քաղաքացիական պատերազմ 1263–67*): Հ. III-ի օրոք հրավիրվել է անգլ. 1-ին խորհրդարանը:

ՀԵՆՐԻ IV (1366–1413), Անգլիայի թագավոր՝ 1399-ից: Լանքաստերների հարստության 1-ին ներկայացուցիչը: Գահընկեց է արել Ռիչարդ II-ին: Հ. IV-ի օրոք ընդարձակվել են խորհրդարանի իրավասությունները:

ՀԵՆՐԻ V (1387–1422), Անգլիայի թագավոր՝ 1413-ից՝ Լանքաստերների հարստությունից: Վերսկսելով *Հարյուրամյա պատերազմը*՝ 1415-ին ֆրանսիացիներին ծանր պարտության է մատնել Ազենկուրի մոտ և կարճ ժամանակում նվաճել Հս. Ֆրանսիան, այդ թվում՝ Փարիզը:

ՀԵՆՐԻ VI (1421–1471), Անգլիայի թագավոր՝ 1422–61-ին՝ Լանքաստերների հարստությունից: 1-ին անգամ գահազրկվել է Կարմիր և Սպիտակ վարդերի պատերազմի ժամանակ, ապա՝ հերթական հեղաշրջումից (1470-ի հոկտ.–1471-ի ապրիլ) հետո և սպանվել Թաուերում:

ՀԵՆՐԻ VII (1457–1509), Անգլիայի թագավոր՝ 1485-ից: Թյուդորների հարստության 1-ին ներկայացուցիչը: Բոսվորտի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հաղթել է Ռիչարդ III-ին: Հ. VII-ի օրոք դրվել են անգլ. արսոլյուտիզմի հիմքերը:

ՀԵՆՐԻ VIII (1491–1547), Անգլիայի թագավոր՝ 1509-ից՝ Թյուդորների հարստությունից: Նրա օրոք իրականացվել է Ռեֆորմացիա: 1534-ին խորհրդարանը նրան հռչակել է անգլիկան եկեղեցու առաջնորդ: 1536 և 1539-ին բռնագրավել է վանքապատկան կալվածքները՝ հօգուտ նոր ազնվականության:

ՀԵՆՐԻ II (Henri, 1519–1559), Ֆրանսիայի թագավոր՝ 1547-ից, Վալուաների հարստությունից: 1552-ին Հ. II-ի զորքերը գրավել են Մեցի, Տուլի և Վերդենի եպիսկոպոսությունները (Հռոմ. սրբազան կայսրություն): 1559-ին ստորագրել է Կատո-Կամբրեզիի հաշտության պայմանագիրը, որով ավարտվել են Իտալ. պատերազմները (1494–1559):

ՀԵՆՐԻ III (1551–1589), Ֆրանսիայի թագավոր՝ 1574-ից՝ Վալուաների հարստությունից: Պայքարել է ինչպես *հուգենոտների*, այնպես էլ Կաթոլիկ. լիգայի առաջնորդների դեմ: 1588-ին գահընկեց է արվել, սակայն, համաձայնության գալով հուգենոտների առաջնորդ Հենրի Նավառացու հետ, պաշարել է Փարիզը, որտեղ և դավադրաբար սպանվել է:

ՀԵՆՐԻ IV (1553–1610), Ֆրանսիայի թագավոր՝ 1589-ից (փաստացի՝ 1594-ից): Բուրբոնների հարստության 1-ին ներկայացուցիչը: *Անտուան Բուրբոնի* որդին: 1562-ից՝ Նավառայի թագավոր (Հենրի Նավառացի): Հուգենոտների առաջնորդը՝ կրոն. պատերազմների ժամանակ: 1593-ին Հ. IV ընդունել է կաթոլիկություն, որից հետո՝ 1594-ին, Փարիզը նրան ընդունել է որպես թագավորի: 1598-ին հրապարակել է Նանտի հրովարտակը: Սպանել է կաթոլիկ մոլագարը:

ՀԵՆՐԻԵՏԱՅԻ ԿՂԶԻ, Արևելասիբիր. ծովում՝ Դե Լոնգի կղզեխմբում (ՌԴ): Տարածքը՝ 12 *կմ*²: Բարձր.՝ մինչև 315 *մ*: Արևելասիբիր. ծովի ծայր հս-ի կղզին է՝ ծածկված սառցադաշտով:

ՀԵՆՐԻԿ ԾՈՎԱԳՆԱՅ (Dom Henrique o Navegador, 1394–1460), Պորտուգալիայի գահաժառանգ (Խուան I-ի որդին), կազմակերպել է ծով. արշավանքներ դեպի Աֆրիկայի հս–արմ. ափերը՝ սկզբնավորելով պորտուգ. արշավանքները, Աֆրիկայից ստրուկների տեղափոխումը Պորտուգալիա:

ՀԵՆՐԻԽ ՖՈՆ ՖԵԼԴԵԿԵ (Heinrich von Veldeke, 1140-ի և 1150-ի միջև–մոտ 1200), նիդեռլանդացի գերմանագիր բանաստեղծ: Հեղինակ է «Էնեական» (1175–90, հրտ.՝ 1784) ասպետ. վեպի (անանուն հեղինակի «Էնեի սիրավեպը» ֆրանս. երկի բանաստեղծ. փոխադրումն է), որը վեպի ժանրի գերմ-ով 1-ին օրինակն է:

ՀԵՆՑԵ (Henze) Հանս Վեռներ (1926–2012), գերմանացի կոմպոզիտոր: Գդեռհ Արվ-ների ակադ-ի թղթ. (1968), Լոնդոնի թագավոր. երաժշտ. ակադ-ի պատվ. (1975) անդամ: Հեղինակ է «Հրաշքների թատրոն» (1949), «Համբուրգի արքայազնը» (1960), «Անգլիական կատու» (1983) օպերաների, «Ապուշը» (ըստ Ֆ. Ա. Դոստոևսկու, 1952), «Պարի մարաթոն» (1957), «Կայսեր սոխակը» (1959) բալետների, սիմֆ. էտյուդների (1955), կանտատների, սիմֆոնիաների, կամեր-գործիք. և այլ երկերի:

ՀԵՆՔՍ (Hanks) Թոմ (ծ. 1956), ամերիկացի կինոդերասան: Խաղացել է դրամատիկ. (Շերման՝ «Ամբարտավանության խարույկներ»), հերոս. (տիեզերագնաց Լովել՝ «Ապոլոն-13»), կոմիկ-գրոտեսկ. (Ֆորեսթ Գամփ՝ «Ֆորեսթ Գամփ») դերեր: Նկարահանվել է նաև «Տերմինալ», «Դա Վինչիի ծածկագիրը», «Հրեշտակներ և դևեր» ֆիլմերում: «Օսկար» (1994, 1995) մրց.:

ՀԵՇ (Hess) Անդրաշ, հունգար 1-ին տպագրիչը: 1472-ին Բուդայում (Բուդապեշտ) հիմնադրել է 1-ին տպարանը, 1473-ին

տպագրել է «Հունգարների ժամանակագրությունը»:

ՀԵՇՏՈՑԱԲՈՐԲ, **վագինիտ, կոլպիտ**, հեշտոցի լորձաթաղանթի բորբոքում: Հարուցիչները տարբեր նախակենդանիներ (*տրիխոմոնոզ*) և բակտերիաներն են: Արտահայտվում է արտաքին սեռ. օրգանների շրջանում այրոցի զգացումով և սպիտակահոսությամբ:

ՀԵՊԱՏԻՏ, տես *Լյարդաբորբ*:

ՀԵՊԱՐԻՆ, բազմաշաքար. կազմված է գլյուկոզամինի և գլյուկուրոնաթթվի մնացորդներից, պարունակվում է լյարդի, թոքերի, զարկերակների պատերի արտաբջջ. նյութում: Արյան հակամակարդիչ համակարգի բաղադրիչ է: Կիրառվում է թրոմբների բուժման և կանխարգելման համար:

ՀԵՊՏԱՆ, $CH_3(CH_2)_5CH_3$, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 98,43°C: Պարունակվում է նավթում: Շարժիչների վառելանյութերի ճայթակայունության չափանմուշ է (տես *Օկտանային թիվ*):

ՀԵՊՏՈՂ [< հուն. hepta – յոթ և (*էլեկտր)ոդ*], ***էլեկտրոնային լամպ.*** բաղկացած է 7 էլեկտրոդից՝ կատող, անող և 5 ցանց (2 կառավարող, 2 էկրանող և 1 պաշտպան.): Կիրառվում է ռադիոէլեկտրոն. սարքերում (օր.՝ սուպերհետերոդինային ռադիոընդունիչում)՝ բարձր հաճախության էլ. տատանումները խառնելու և փոխակերպելու համար:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԱՊԱՐԱՏ, *հեռագրական կապի* էլ. հաղորդագրությունների հաղորդման և ընդունման ապարատ: Առաջին Հ. ա. ստեղծել և ցուցադրել է Պ. Լ. *Շիլինգը* (1832): Տես նաև *Բոդոյի ապարատ*, *Մորզեի ապարատ:*

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԿԱՊ, էլ. կապ.՝ հեռագրերը հաղորդելու համար՝ ընդունման կետում դրանց պարտադիր գրանցմամբ. իրականացվում է հաղորդալարերով հաղորդվող էլ. ազդանշաններով կամ ռադիոազդանշաններով: Հաղորդագրությունները հաղորդվում են *հեռագրական ապարատներով* կամ *հեռագրական ցանցի* կապուղիներով: Հ. կ. հիմնադրվել է 1832–ին՝ Պ. Լ. *Շիլինգի*, Բ. Ս. *Յակորիի*, Ս. Մ. *Մորզեի* աշխ-ների հիման վրա:

ՀԵՌԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գիտ-յան և տեխնիկայի բնագավառ. ուսումնասիրում է *հեռագրական կապի* կառուցման սկզբունքները, հեռագր. ազդանշանների հաղորդման եղանակներն ու մշակում դրանք իրականացնող սարքավորումները, գնահատում նաև հեռագր. կապուղիներով տեղեկույթի հաղորդման որակը: Հ-յան մեջ հատուկ ուղղություն է *ֆաքսիմիլային կապը*:

ՀԵՌԱԴԻՏԱԿ (լատ.՝ Telesciopium), 1. համաստեղություն երկնքի Հվ. կիսագնդում՝ Սիրամարգ, Ջոհասեղան, Հվ. թագ, Աղեղնավոր, Հնդիկ համաստեղությունների միջև: Հս. միջին լայն-ներից մասամբ երևում է միայն ամռանը: 2. Երկու զուգահեռ դիտակներից բաղկացած օպտիկ. սարք՝ հեռու առարկաները զույգ աչքով դիտելու համար: Մեծացնում է 2–22 անգամ:

ՀԵՌԱԶԳԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ, տելեպատիա (< հուն. tele – հեռու, հեռավորություն և pathos – զգացողություն), հասկացություն, որն օգտագործվում է արտահայտելու համար հեռ-յան վրա, առանց զգայական օրգանների միջնորդության, զգացմունքների և մտքերի փոխանցման երևույթը:

ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԱՊԱՐԱՏ, ծառայում է խոսքային տեղեկույթի հաղորդման և ընդունման համար: Հ. ա. սովորաբար հանդերձվում են համարի որոշիչով, հեղուկ. բյուրեղ. դիսփլեյով, տվյալների փոխանցման սարքավորման (համակարգիչ, մոդեմ, ֆաքս, ինքնապատասխանիչ) միացման բնիկով, համարների հավաքման տոնային կամ իմպուլս. ռեժիմով, ինքնազանգիչով, 50 և ավելի համարներով հեռախոս. տեղեկատուով, բարձրախոսով, կոնֆերանսի ռեժիմով և այլ սարքերով:

ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԿԱՊ, **հեռախոսակապ**, լարերով տարածվող էլ. կամ ռադիոազդանշաններով հեռ-յան վրա **խոսքային տեղեկույթ** հաղորդող *էլեկտրակապի* համակարգ: Սկզբնավորվել է 1876-ին՝ Ա. *Բելլի* (ԱՄՆ) հայտնագործությամբ և առաջին հեռախոսային կայանի ստեղծմամբ (1878, Նյու Հեյվեն, ԱՄՆ): Հ. կ. լինում է **տեղական** (քաղաք. և գյուղ.), **միջքաղաքային և միջազգային**, նաև **ներգերատեսչական, ներարտադրական** և շարժ.՝ *ռադիոհեռախոսակապ* (բջջ. կապ): Հ. կ-ի գծերը բարդ տեխ. կառույցներ են (որոշ մերձքաղաք. մալուխ. գծերում միջանկյալ ուժեղարարների թիվը հասնում է մի քանի հզ-ի): 1980-ական թթ-ից ներդրվել են կապի օպտիկաթելքային մալուխներ, ստեղծվում են ընդունման-հաղորդման կոլեկտիվ ցանցեր (բջջ. ցանցի հիման վրա): Հեռավոր կապի համար ավելի ընդլայնվում է ԵԱՀ-ների կիրառությունը:

ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՅԱՆՑ, *հեռախոսային կապի* իրականացման տեխ. կառույցների և սարքավորումների ամբողջություն. կազմված է կապի հեռախոսային հանգույցներից (հեռախոս. կայաններ, ենթակայաններ, խտարարներ ևն), կապի գծերից և *հեռախոսային ապարատներից* (բաժանորդ. տեղակայանքներ): Ըստ ֆունկցիաների և կառուցվածք. առանձնահատկությունների՝ լինում են **տեղական** (գյուղ. և քաղաք.), **ներգոտիական, գոտիական, միջքաղաքային և միջազգային Հ. ց-եր**:

ՀԵՌԱՉԱՓ, օբյեկտների հեռ-յունն անուղղակիորեն չափող սարք: Ըստ գործողության սկզբունքի՝ լինում են **օպտիկական** և **ձայնային** Հ-ներ (*ռադիոհեռաչափներ*, էլեկտրաօպտիկ. Հ-ներ): Օգտագործում են գեոդեզիայում, աստղագիտ-յան, տեղագրության, լուսանկարչության մեջ, ռազմ. գործում և այլ բնագավառներում:

ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, Ասիայի արլ. տարածքի պայման. անվանումը. ներառում է ՌԴ-ի և Չինաստանի արլ-ը, Կորեայի ԺԴՀ-ն, Կորեայի Հանրապետությունը, Ճապոնիան, երբեմն՝ նաև Ֆիլիպինները:

ՀԵՌԱՎՈՐ ԵՎ ՄՈՏԱԿԱ ԿԱՐԳԵՐ (ֆիզ.), ատոմների կամ մոլ-ների փոխդասավորության կարգավորվածությունը պինդ մարմիններում և հեղուկներում: Միջատոմ. հեռ-յունների հետ համեմատելի հեռ-յուններում եղած կարգավորվածությունը կոչվում է **մոտակա կարգ**, իսկ անհամեմատելի մեծ հեռ-ների վրա կրկնվող կարգավորվածությունը՝ **հեռավոր կարգ**:

ՀԵՌԱՎՈՐԱԲԵՎԵԼՅԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲ, կազմվել է Ավստրալիայի, Մեծ Բրիտանիայի, Հնդկաստանի, Չինաստանի, ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի ներկայացուցիչներից՝ Ճապոնիային պարտադրելու 1945-ի սեպտ. 2-ի կապիտուլյացիայի պայմանները: 1946–47-ին Հ. հ. ընդունել է մի շարք որոշումներ՝ միտված Ճապոնիայի ժողովրդավարացմանը և զինաթափմանը: Լուծարվել է 1952-ի ապրիլի 25-ին՝ ԱՄՆ-ի նախաձեռնությամբ:

ՀԵՌԱՎՈՐԱԲԵՎԵԼՅԱՆ ՌԱՍԱ, մոնղոլոիդների մեծ ռասայի կազմում: Մյուս մոնղոլոիդներից տարբերվում է նեղ քթով և երեսով, բարձր գանգով: Ներկայացուցիչներն են հս. չինացիները և կորեացիները:

ՀԵՌԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ, հիպերմետրոպիա (< *հիպեր-*... և հուն.՝ metron – չափ, ops – աչք), տեսողության թերություն, որը խանգարում է մոտ տարածությունում տեղակայված առարկաները պարզ տեսնելուն: Պայմանավորված է աչքի եղջերաթաղանթի և ոսպնյակի բեկունակության թուլությամբ կամ աչքի առաջ-հետին առանցքի կարճությամբ: Շտկվում է ուռուցիկ տեսապակիներով (կոնվեքսներ):

ՀԵՌԱՏԻՊ, ընդունող-հաղորդող տառատիպ ստեղնաշարավոր *հեռագրական ապարատ*: Օգտագործվում է կապուղիներով (հեռատիպ. ցանց) հաղորդագրություններ հաղորդելու համար, նաև որպես տեղեկույթի ներանցիչ-արտանցիչ սարք՝ տվյալների մշակման ինքնաշխատ համակարգերում: Ընդունվող հաղորդագրությունները գրառվում են ավտոմատ:

ՀԵՌԵՐԱ (Herrera) Խուան Բատիստա դե (մոտ 1530–1597), իսպանացի ճարտ-գիտնական: Ուշ Վերածննդի ներկայացուցիչ: Վերածննդի ճարտ-յան «ոչ զարդարուն» («հեռերեսկո») ոճի հիմնադիրը: 1567-ից գլխավորել է *Ֆիլիպ II*-ի համար կառուցվող Էսկորիալ մենաստան-պալատի շին-յունը:

ՀԵՌԵՆԱՆԴԵՍ (Hernández) Խոսե (1834–1886), արգենտինացի բանաստեղծ, լրագրող: Գաուչոների մասին «Մարտին Ֆիերո» (մաս 1, 1872, մաս 2, «Մարտին Ֆիերոյի վերադարձը», 1879) պոեմը, որ գրել է ժող-վիպերգ. ավանդույթներով, XIX դ-ի Արգենտինայի ռեալիստ. գրկ-յան գլուխգործոցն է:

ՀԵՌԻՆԱՆԴԵՍ Ֆելիսբերտո (1902–1964), ուրուգվայցի գրող: Հեղինակ է ֆանտաստիկ, սյուրռեալիզմի տարրերով արձակ գործերի, «Կլեմենտե Կոլինզի ժամանակներից» (1942) ինքնակենսագր. վիպակի, «Լույսերը չեն վառել» (1947) նովելների ժող-ի, «Օրտենսիա անունով տիկնիկները» (1949), «Ջրասույզ տունը» (1960) վիպակների:

ՀԵՌՈՒՍՏԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ, իրականացվում է օպերատորից (կամ համակարգչից) դեպի կառավարվող օբյեկտ կապուղիներով ուղարկվող կոդավորված էլ- կամ ռադիոազդանշանների միջոցով: Հ-ման ազդանշանները կառավարվող օբյեկտում փոխակերպվում են կառավարող ներգործությունների, որոնք իրականացնում են այդ փոփոխությունները:

ՀԵՌՈՒՍՏԱՄԵԽԱՆԻԿԱ, 1. գիտ-յուն հեռ-յունից կառավարման ու տվյալ օբյեկտի վերաբերյալ կառավարող տեղեկույթ կրող կոդավորված էլ. կամ կապուղիներով հաղորդվող ռադիոազդանշանների վերահսկման մասին: Կառավարման և վերահսկման օբյեկտներ կարող են լինել տեխնոլոգ. շարժընթացները, մեքենաները, կենսբ. համակարգերը ևն: 2. Տեխնիկայի բնագավառ, որտեղ մշակում, ստեղծում և օգտագործում են կոդավորման հաղորդալար. կապի ու ռադիոկապի կապուղիներով տեղեկույ-

թի հաղորդման և ընդունման միջոցներ, որոնք օգտագործվում են էներգահամակարգերի, գազա- ու նավթատարների, ԱԷԿ-ների և այլ համակարգերի օբյեկտների հեռուստակառավարման և հեռուստաչափման նպատակներով:

ՀԵՌՈՒՍՏԱՉԱՓՈՒՄՆԵՐ, տեխ. շարժընթացների, բնության երևույթների կամ կենդանի օբյեկտների վիճակը բնութագրող ֆիզ. մեծությունների չափումներ հեռ-յունից: Չափումները կատարվում են տվիչներով. ստացված տվյալներն ավտոմատ հաղորդվում են (սովորաբար՝ կոդավորված ռադիոազդանշանների տեսքով) ընդունող սարքավորմանը, որտեղ նրանք վերծանվում են հետագա մշակման կամ գրանցման համար:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԱՇՏԱՐԱԿ, պատվանդան (սովորաբար՝ մետաղե, երկաթբետոնե կամ համակցված), որի գագաթին տեղակայվում են հաղորդող հեռուստակայանի, նաև ռադիոհաղորդման, ռադիոռելեային, ռադիոհեռախոս. կապի անտենաներ, երբեմն՝ նաև օդերևութաբան. դիտարկման սարքեր: Աշտարակաբնի ներսում տեղադրում են ռադիո- և հեռուստատես. սարքավորումներ: Հ. ա-ի բարձրությունը որոշվում է հեռուստակայանի գործողության շառավղից և հաղորդիչ *հեռուսպարեևային անտենաների* քանակից ու չափերից ելնելով:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԹԱՍՏՐՈՆ, *հեռուսպարեևային արվեստի* տեսակ: Բեմադրություններ ստեղծվել են 1957–ից, 1973–ից կիրառվել է տեսագրման տեխնիկան (1975–ից՝ գունավոր, Ի. Մ. Շտոկի «Մատանայի ջրաղացը»): Խաղացանկն ընդգրկել է հայ և այլազգի հեղինակների գործեր («Միջնորդ տեր-պապան»՝ ըստ Ե. Օտյանի, 1970, «Երկիր Նաիրի»՝ ըստ Չարենցի, 1980, «Մամփրե արքան»՝ ըստ Մ. Գալշոյանի, 1986, Ն. Դումբաձեի «Մեղադրական եզրակացություն», 1979, Վերերի «Գործարք», 1994, առաջին բազմամասանոց ներկայացումը, ևն): Հ. թ-ի զարգացմանը նպաստել են ռեժ-ներ Կ. Արզումանյանը, Մ. Մարինոսյանը, Օ. Մելիք-Վրթանեսյանը, Թ. Բիտյուցկայա-Էլիբեկյանը, դերասաններ Գ. Ջանիբեկյանը, Ս. Սարգսյանը, Վ. Վարդերեսյանը, Է. Էլբակյանը, Ա. Խոստիկյանը, Շ. Ղազարյանը, Ռ. Քոթանջյանը, Վ. Մսրյանը և ուր.:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԿԻՆՈ, *հեռուսպարեևային արվեստի* տեսակ: Ֆիլմերն ստեղծվում են կինեմատոգրաֆիայի հնարքները (մոնտաժ, տարաչափ պլաններ, կադր ևն) հեռուստաէկրանի տեխ. հնարավորություններին և հեռուստալսարանի առանձնահատկություններին հարմարեցնելով [«Խղճի ձայնը» (1958, ռեժ.՝ Վ. Զաքարյան), «Սայաթ-Նովա» (1960, ռեժ.՝ Կ. Արզումանյան) ևն]: 1968–ին Հեռուստաստուդիայում կազմակերպված հեռուստաֆիլմերի կինոմիավորման հիման վրա 1970–ին ստեղծվել է «Երևան» ստուդիան: Նկարահանել է «Մորգանի խնամին» (ըստ Շիրվանզադեի, 1970, ռեժ.՝ Ա. Մանարյան), «Ձորի Միրոն» (ըստ Մ. Գալշոյանի, 1981, ռեժ.՝ Ժ. Ավետիսյան), «Հարսնացու հյուսիսից» (1975, ռեժ.՝ Ն. Հովհաննիսյան, երեքն էլ՝ գեղ.), «Մենք» (1969), «Մեր դարը» (1982, վավերագր., երկուսն էլ՝ ռեժ.՝ Ա. Փելեշյան), «Մատենադարան» (1983–94, մաս 1–18, գիտահանրամատչելի, ռեժ.՝ Հ. Հախվերդյան) և այլ ֆիլմեր:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ Ա.ԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ, հիմնադրվել է 2001–ին՝ հեռարձակվող լրատվության ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, միջոցների արտոնագրումը, ինչպես նաև հեռուստաընկ-ների և ռադիոընկ-ների գործունեության վերահսկման նպատակով: Բաղկացած է 8 անդամից՝ 4–ին 6 տարի ժամկետով ընտրում է ՀՀ ԱԺ-ն, իսկ մյուսներին նշանակում է ՀՀ նախագահը: Նախագահներ՝ Գրիգոր Ամալյան, Գագիկ Բունիաթյան (2013–ից):

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԿԱՄԵՐԱՅԻՆ ԲԱԼԵՏԻ ԽՈՒՄԲ, գործել է 1979–90–ին (հիմնադիր-գեղ. ղեկ.՝ Ռուդոլֆ *Խառատյան*) Երևանում: Խաղացանկում՝ դաս. («Օթելլո», ըստ Հ. Պյորսելի երաժշտության, 1985), հայկ. ժող. («Անուշ», ժող. երաժշտությամբ, 1986), հայկ. պատմ. թեմաներով («Արտավազդ և Կլեոպատրա», ըստ Ա. Տերտերյանի երաժշտության, 1983, ևն) խորեոգրաֆիկ բեմավորումներ:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ, գիտ-յան, տեխնիկայի և մշակույթի բնագավառ, որը ռադիոազդանշաններով կամ մալուխով իրականացնում է շարժվող պատկերների հեռահաղորդումը: Հ-ում ընդունված է պատկերի տարրերի հաջորդական փոխանցումը, որի համաձայն՝ հաղորդման կետում պատկերի տարրերը փոխակերպվում են էլեկտրաազդանշանների հաջորդականության (**պատկերի վերլուծություն**) և կապուղիներով հաղորդվում ընդունման կետ, որտեղ ենթարկվում են հակադարձ փոխակերպման (**պատկերի սինթեզ**): Հ-յան զարգացումն ընթացել է պատկերի ցայտունության, խանգարումակայունության բարձրացման (մալուխ. Հ.) և գործողության հեռ-յան մեծացման (արբանյակ. Հ.) ուղղությամբ: Ներկայում լայն տարածում է ստանում **թվային Հ.**, որի առավելությունը **նմանակայինի** (անալոգային) համեմատությամբ մեծ կայունությունն է աղավաղումների նկատմամբ և կապուղիներով հաղորդվող տվյալների ավելի փոքր ծավալը (տեսաազդանշանի սեղմում). նմանակային հեռուստատես. մեկ կապուղու համախությամբ հաղորդվում են տասնյակ թվային ծրագրեր: Հ-յան պատմության մեջ մեծ է Հովհաննես *Աղամյանի* դերը, որը 1907–ին առաջարկել է պատկերի հեռահաղորդման երկգույն՝ սև–սպիտակ առաջին համակարգը, իսկ 1925–ին պատրաստել և ցուցադրել է «Հեռատես» առաջին հեռուստացույցը:

ՀԵՌՈՒՍՏԱՅՈՒՅԹ, հեռուստատես. պատկերի և ուղեկցող ձայն. ռադիոազդանշանները պատկերի ու գույնի փոխակերպող հեռուստաընդունիչ: Մինչև 1990–ական թթ. օգտագործվել են կինեսկոպով (էլեկտրոնաճառագայթ. խողովակով) Հ-ներ: XX դ–ի վերջին ի հայտ եկան **հարթ կինեսկոպով**, XXI դ–ի սկզբից՝ հեղուկ բյուրեղ. և պլազմ. էկրաններով Հ-ներ: Ժամանակակից կենցաղ. Հ-ների չափերը հասնում են մի քանի *մ*-ի, իսկ հաս. վայրերի համար նախատեսվածները պատրաստվում են դիսկրետ *լուսադիոդների* կամ լազերային վահանակների մատրիցների հիմքի վրա: 2008–ի հոկտ. 8–ին վաճառքի է հանվել առաջին լազերային Հ., իսկ 2010–ից Հ–ի զարգացումն իրականացվում է բարձր հստակության հեռուստատեսության (ԲՀՀ), եռաչափ (3D) և թվային հեռուստատեսության խրախուսման ուղղությամբ:

ՀԵՄԻՆ–ԼՈՒՐՅԵ Ռոման Բենիամինովիչ (1922–1985), ռուս. կենսաքիմիկոս, գենետիկ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1974): Հետազոտել է սպիտակուցի կենսասինթեզի կարգավորման մեխանիզմը, գենետիկ. կենսընթացների ֆերմենտաբանությունը և ԴՆԹ–կախյալ ՌՆԹ–պոլիմերազ ֆերմենտի կառուցվածքն ու ֆունկցիան: Հեղինակ է «Գենոմի անկայունությունը» (1985) հիմնարար մենագրության:

ԽՍՀՄ Պետ. (1982), Լենինյան (1986, հետմահու) մրց-ներ:

ՀԵՍԻՈԴՈՍ (Hesiodos), մ. թ. ա. VIII–VII դդ–ի հույն բանաստեղծ: Հինհուն. գրկ-յան մեջ տոհմաբան. ուղղության հիմնադիրը: Պահպանվել են «Թեոգոնիա» («Աստվածների ծննդաբանություն»), «Աշխատանք և օրեր» ուսուցող. պոեմները:

ՀԵՄՊԵՐԻԴԵՐ, *Ափրանտի* դուստրերը հուն. դից-յան մեջ: Ապրել են հեքիաթ. այգում, որտեղ աճում էր ոսկե պտուղներով խնձորենի: Հարյուրգլխանի հրեշի հսկողությամբ պահպանվող խնձորենիի գողությունը Հ–ի այգուց Հերակլեսի սխրագործություններից է:

ՀԵՍՍ (Hess) Գերման Իվանովիչ (1802–1850), ռուս. (ծագումով՝ գերմանացի) քիմիկոս, ջերմաքիմիայի հիմնադիրներից: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1830): Հայտնագործել է իր անունով հայտնի *Հեսսի օրենքը*: Ուսումնասիրել է պլատինի կատալիտիկ հատկությունները, կովկաս. նավթի բաղադրությունը: Հեղինակ է «Տեսական քիմիայի հիմունքները» (1831) հիմնարար աշխ-յան:

ՀԵՍՍ Մոզես (1812–1875), գերմանացի հրեա փիլ., գրող: «Ճշմարիտ սոցիալիզմի» տեսաբան. այն դիտել է որպես գերմ. գաղափարախոսություն, ֆրանս. ուտոպ. սոցիալիզմի և Լ. Ֆոյերբախի բարոյագիտ-յան համադրություն: Որշակի ազդեցություն է թողել Կ. Մարքսի (այսպես կոչված՝ օտարման հայեցակարգի) և Ֆ. Էնգելսի կոմ. ուսմունքների ձևավորման վրա: «Հռոմ և Երուսաղեմ» (1862) աշխ-յան մեջ առաջ է քաշել հրեական պետություն ստեղծելու խնդիրը՝ դառնալով սիոնիզմի նախակարապետը:

ՀԵՍՍ Ռուդոլֆ (1894–1987), գերմանացի պետ. և քաղ. գործիչ,1925–ից՝ Հիտլերի անձնական քարտուղարը, 1933–ից՝ նրա տեղակալը կուս-յունում: 1941–ին հաշտության առաջարկով մեկնել է Մեծ Բրիտանիա: Նյուրնբերգյան դատավարությամբ դատապարտվել է ցմահ ազատազրկման:

ՀԵՍՍ Վալտեր Ռուդոլֆ (1881–1973), շվեյցարացի ֆիզիոլոգ: Բացահայտել է ներքին օրգանների վրա միջանկյալ ուղեղի համաձայնեցնող ազդեցության մեխանիզմը: Նոբելյան մրց. (1949, Ա. *Մոնիշի* հետ):

ՀԵՍՍ Վիկտոր Ֆրանց (1883–1964), ավստրիացի ֆիզիկոս: 1938–ից՝ ԱՄՆ-ում: Հայտնաբերել է տիեզերական ճառագայթումը: Նոբելյան մրց. (1936):

ՀԵՍՍԵ (Hesse) Հերման (1877–1962), գերմանացի գրող: 1912–ից՝ Շվեյցարիայում: «Պետեր Կամենցինդ» (1904) «դաստիարակչական» վեպում պատկերել է մարդու ինքնակատարելագործման հավերժ. ձգտումը: «Գերտրուդ» (1910), «Ռոսհալդե» (1914) վեպերում պրագմատիկ արժեքների աշխարհում արվեստագետի հարկադր.

մեկուսացման թեման է: Հեղինակ է նաև XX դ–ի սկզբի եվրոպ. հոգևոր ճգնաժամը պատկերող «Տափաստանի գայլը» (1927, հայ.՝ 2003), «Ուլունքախաղ» (1943) հոգեբ. վեպերի, «Անիվների տակ» (1906), «Քլեյն և Վազներ» (1919) վիպակների, նաև պատմվածքների շարքերի, քննադատ. էսսեների: Հայ. հրատարակվել են նաև «Ներսը և դուրսը» (1991), «Ճանապարհ դեպի ներս» (2004) պատմվածքների ժող–ները: Նորելյան մրց. (1946):

ՀԵՍՍԵՆ (Hessen), երկրամաս Գերմանիայում: Տարածքը՝ 21,1 հզ. *կմ*^{2}, բն.՝ 6 մլն (2013): Վարչ. կենտրոնը՝ ***Վիսբադեն***:

ՀԵՍՍԵՆՅԱՆ ՃԱՆՃ, հացի մոծակիկ (Mayetiola destructor), գալամլակնեբի ընտանիքի միջատ: Հացազգիների վտանգավոր վնասատու է: Զանգված. բազմացման դեպքում կարող է լուրջ վնաս պատճառել բուսաբուծությանը: Տարածված է նաև Այսրկովկասում, ՀՀ–ում սակավաթիվ է:

ՀԵՍՍԻ ՕՐԵՆՔ, քիմ. ռեակցիայի ջերմ. էֆեկտը՝ արտաքին ուժերի դեմ աշխ–ի բացակայության դեպքում, կախված է միայն ելանյութերի ու ռեակցիայի արգասիքների բնույթից և անկախ է համակարգում տեղի ունեցող միջանկյալ քիմ. փոխարկումներից: Ջերմաքիմիայի հիմն. օրենքն է, սահմանել է Գ. *Հեսսը* (1840):

ՀԵՍՍԻ ԳԾՈՂ, XII դ–ի քանդակագարդող վարպետ, խաչքարեր կազմող: Մուշի Առաքելոց վանքին մերձակա՝ «Խաչաթոռ» կամ «Թարգմանչաց» կոչվող 9 խաչքարից 2–ի հեղինակն է (1123, 1141, պահպանվել է ստորագրությունը): Ենթադրաբար՝ 1125–ին մասնակցել է Առաքելոց վանքի նորոգմանը:

ՀԵՍՍԻ ՆԱՎԵ (մ. թ. ա. II հզ–ամյակի 2–րդ կես), ***Մովսես*** մարգարեի օգնականը և փոխարինողը՝ ըստ ***Ասպվածաշնչի***: Առաջնորդել է հրեաների անցումը Հորդանան գետով, ղեկավարել Ավետյաց երկրի գրավումը (նկարագրված են Հին կտակարանի «Հեսու» գրքում):

ՀԵՎԵԱ, (Hevea), իշականեուկազգիների ընտանիքի մշտադալար ծառերի ցեղ: Հայտնի է ավելի քան 13 (այլ տվյալներով՝ 20) տեսակ՝ Ամերիկայի արևադարձներում: Բրազիլ. Հ. բնական կաուչուկի հիմն. աղբյուրն է (1 ծառից խեժածորման միջոցով ստանում են տարեկան 3–7,5 *կգ* կաուչուկ): Մշակվում է արևադարձ. երկրներում:

ՀԵՎԵԼԻՈՒՍ (Hevelius) Յան (1611–1687), լեհ աստղագետ, լուսնագրության հիմնադիրը: Գդանսկում հիմնադրել է աստղադիտարան, կազմել է Լուսնի առաջին մանրամասն քարտեզները. հրատարակել է «Լուսնագրություն կամ Լուսնի նկարագրությունը» (1647) գրքում: 1564–ին կազմել է աստղերի դիրքերի աստղացուցակը: Հայտնաբերել է 4 գիսավոր:

ՀԵՎԵՇԻ (Hevesy) Գեորգ (Դյորդ) Կառլ ֆոն (1885–1966), հունգար ճառագայթաքիմիկոս: 1943–ից՝ Շվեդիայում: Իզոտոպներն օգտագործել է որպես նշանակիր ատոմներ քիմ. ռեակցիաների մեխանիզմներն ուսումնասիրելու համար, առաջարկել (1913, Ֆ. Պանետի հետ) իզոտոպ. ինդիկատորների եղանակը: Հայտնագործել է հաֆնիումը (1923, նիդեռլանդացի սպեկտրադիտորդ Դ. Կոստերի հետ): Նորելյան մրց. (1943):

ՀԵՎԻՍԱՅԴ (Heaviside) Օլիվեր (1850–1925), անգլիացի ֆիզիկոս: Աշխ–ները վերաբերում են ***էլեկտրադինամիկային*** (Հ. *Հերցից* անկախ տվել է ***Մաքսվելի հավասարումների*** ժամանակակից տեսքը): Ստեղծել է հեռու տարածություններ ազդանշանների հաղորդման տեսությունը, բացահայտել մթն–ի իոնացված շերտի գոյությունը (Հ.–Քենելիի շերտ): Օպերատոր. և վեկտոր. հաշիվների ստեղծողներից է:

ՀԵՎՈՐԹ (Haworth) Ուոլթեր Նորման (1883–1950), անգլիացի քիմիկոս–օրգանիկ: Լոնդոնի թագավոր. ընկ–յան անդամ (1928–ից), նախագահ՝ 1944–46–ին: Սինթեզել է (1933) C վիտամինը: Նորելյան մրց. (1937):

ՀԵՏ ՈՒ ԱՌԱՋ, հայկ. կլոր պարի տեսակ: Տարածված է Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում: Քաղաքներում պարում են դանդաղ, հանդիսավոր, գյուղերում՝ արագ, թռիչքներով:

ՀԵՏԱԳԻԾ, 1. (ֆիզ.) ***նյութական կետի*** շարժման անընդհատ գիծը: Եթե Հ. ուղիղ գիծ է, կետի շարժումը կոչվում է ուղղագիծ, հակառակ դեպքում՝ կորագիծ: Ազատ նյութ. կետի Հ–ի ձևը կախված է կետի վրա ազդող ուժերից, շարժման սկզբն. պայմաններից և հաշվարկման համակարգից, որի նկատմամբ դիտվում է շարժումը: 2. (Ռազմ.) հրազենի փողի ակոսի թռիչքակետից մինչև թիրախին դիպչելու կետն արկի (հրթիռի, գնդակի) զանգվածի կենտրոնի շարժման գիծը:

ՀԵՏԱԴԱՐՁ ՏԻՖ, 1. **ոջլային, համաճառակային, եվրոպական Հ. տ.**, մարդու սուր վարակիչ հիվանդություն (սպիրոխետոզների խմբի): Ընթացքը նոպայաձև է (դող, տենդ, հոդերի և սրբանի շրջանի ցավեր)՝ ախտանշանների ժամանակավոր թուլացումներով (ռեմիսիա): Փոխանցվում է ոջիլների միջոցով: ՀՀ–ում բռնկվել է 1917–19–ին: Ներկայում այն լրիվ վերացել է: 2. **Տզային, տեղաճարակային Հ. տ.**, բնորոշ է արտահայտված բնական օջախայնությունը: Փոխանցվում է տզերի միջոցով: Կլինիկորեն նման է ոջլային տեսակին, սակայն ընթացքն ավելի թեթև է:

ՀԵՏԱԴԱՐՁ ՏՐԱՄԱԽԱՉՈՒՄ, բեկկրոս, հիբրիդ կենդանու կամ բույսի առաջին սերնդի տրամախաչումը՝ ծնող. ձևերից մեկի հետ՝ գենոտիպը բացահայտելու համար:

ՀԵՏԱԽՈՒՋԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱ, հեռավոր (ռազմավար.), ճակատային (մարտավար.) և ՌԾՆ ավիացիաների տեսակ. նախատեսված է օդ. հետախուզման միջոցով, ցամաք. և ծով. (օվկիանոս.) ռազմ. գործողությունների տարածքում, թշնամու մասին տեղեկություններ հայթայթելու համար: Սպառազինված է օդաչուավոր և անօդաչու ինքնաթիռներով, թռչող սարքերով:

ՀԵՏԱԽՈՒՋՈՒԹՅՈՒՆ, 1. (ռազմ.) թշնամու զորքերի վիճակի, գործողությունների և մտադրությունների, ինչպես նաև տեղանքի, ճառագայթ., քիմ. իրադրության ևնի մասին տվյալներ հավաքելու միջոցառումների համալիր, որն անհրաժեշտ է հակառակորդին բազմակողմանիորեն գնահատելու և ճիշտ որոշում ընդունելու համար: 2. Քննիչի, հետաքննության մարմնի, ուղղիչ աշխ. հիմնարկների վարչակազմի, իրավասու այլ մարմինների ձեռնարկած միջոցառումները՝ քննությունից ու դատից խուսափող մեղադրյալների, պատիժը կրելուց խուսափող և կալանավայրերից փախած դատապարտյալների, ինչպես նաև անհայտ կորած անձանց տեղը որոշելու նպատակով: Միջազգ. Հ. իրականացնում է ***Ինտերպոլը***:

ՀԵՏԱՅՏԱՅԻՆ ՊԱՐԿԵՐ, որոշ պարկավորների, շատ կրծողների և նեղքիթ կապիկների մեծամասնության բերանի խոռոչի կողմն. պարկանման գոյացություններ:

ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇՆԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ (Federal Bureau of Investigation – FBI), ԱՄՆ արդարադատության նախարարության գերատեսչություն (հիմն.՝ 1908): Հետաքննում է դաշն. օրենսդրության խախտումները և ապահովում ԱՄՆ–ի պետ. անվտանգությունը:

ՀԵՏԱՔՐՔՐՈՒՄԻՆԳՈՒԹՅՈՒՆ, 1. (հոգեբ.) անձի վերաբերմունքը իր համար գրավիչ և արժեքավոր առարկայի կամ երևույթի նկատմամբ: Զևավորվում է, երբ նյութ. ու հոգևոր արժեքներն անձի համար սուբյեկտիվ նշանակություն ունեն: 2. (Սոցիոլոգիա) սոցիալ. գործողությունների իրական պատճառ, որն ընկած է անհատների, սոցիալ. խմբերի անմիջական մղումների՝ շարժառիթների, գաղափարների ևնի հիմքում:

ՀԵՏԵՎԱԶՈՐ, ցամաք. զորքերի ամենահին զորատեսակը: Հին Հունաստանում, Հին Հռոմում և այլուր Հ. եղել է գլխ. զորատեսակը: Հ–ի հզորացմանը նպաստել է նաև հրազենի ստեղծումը: Երկրների մեծ մասում Հ. լինում է ծանր և թեթև, կան նաև մոտորացված, օդադեսանտային, ծովային և այլ Հ–ներ:

ՀԵՏԵՎԱԶՈՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՄԵՔԵՆԱ, թրթռուրավոր կամ անվավոր լողացող մարտ. զրահապատ մեքենա. կառուցված ու սարքավորված է զորաշարժ. մարտեր մղելու և զինվորներ փոխադրելու համար: Սպառազինությունը՝ 20 *մմ*–ից ոչ պակաս տրամաչափի հրանոթ, գնդացիրներ, նռնականետներ, հակատանկ. հրթիռների արձակման կայանք: Անձնակազմը՝ 2–3 մարդ, շարժման արագությունը՝ 65–100 *կմ/ժ*:

ՀԵՏԵՎՈՂ ՀԱՄԱԿԱՐԳ, ***ավտոմատ կառավարման համակարգ***, որը հետադարձ կապի միջոցով իր ելքում որոշակի ճշգրտությամբ և մասշտաբով վերարտադրում է մուտքին տրվող կամայական ազդանշանը: Օգտագործվում է չափիչ տեխնիկայում, էլ. շարժաբերներում, հրթիռների ուղղորդման համար:

ՀԵՏԵՐԱ (հուն.՝ heteira – ընկերուհի, սիրուհի), Հին Հունաստանում կրթված, չամուսնացած, ազատ կենսակերպով կին: Հետագայում «Հ.» են անվանել նաև անբարո կանանց:

ՀԵՏԵՐԱԿԻԴՈՋՆԵՐ, թռչունների (հաճախ՝ հավերի) ինվազիոն հիվանդություններ (նեմատոդոզների խմբի հելմինթոզներ): Հարուցիչը կլոր որդերն են (հետերակիդներ), որոնք մակաբուծվում են աղիներում և այլ օրգաններում: Ախտանշանները՝ մարսողության խանգարումներ, ձվատվության նվազում կամ դադարում, հյուծում, երբեմն՝ անկում:

ՀԵՏԵՐԻԻ (հուն.՝ hetaireia – ընկերակցություն, միություն), XVIII դ–ի 2–րդ կես–XIX դ–ի սկզբին հուն. գաղտնի կազմ–յուններ, որոնց նպատակը օսմ. լծի թոթափումն էր:

ՀԵՏԵՐՈ... (հուն՝ heteros – այլ, ուրիշ), բարդ բառերի մաս. նշանակում է այլ, ուրիշ, համապատասխանում է հայ. «տարա...» նախածանցին:

ՀԵՏԵՐՈԳԱՄԵՏՈՒԹՅՈՒՆ, սեռերից մեկի գամետների (սեռ. բջիջների) գենետիկ. անհամարժեքությունը, երբ տվյալ սեռի ***գամետները*** (կոչվում են հետերոգամետներ) պարունակում են ոչ միատեսակ սեռ.

քրոմոսոմներ: Մարդու և կաթնասունների մոտ հետերոգամետ է արական սեռը, իսկ թիթեռների, թռչունների, որոշ սողունների և երկկենցաղների մոտ՝ իգականը:

ՀԵՏԵՐՈԳԱՄԻԱ (< *հետերո...* և հուն.՝ gamos – ամուսնություն), 1. սեռ. կենսընթացի ձև, երբ բեղմնավորման ժամանակ միաձուլվող արական և իգական ***գամետները*** տարբեր են իրենց արտաքին տեսքով և այլ հատկանիշներով: Հ–ի բարձրագույն աստիճանն ***օոգամիան*** է: Կոպուլյացիայի և կոնյուգացիայի ենթարկվող նախակենդանիների համար օգտագործում են «անիզոգամիա» եզրույթը: Տես նաև *Իզոգամիա*: 2. Արական և իգական ծաղիկների ֆունկցիայի կամ բույսի վրա նրանց տեղադրության փոփոխությունը (որպես անոմալիա):

ՀԵՏԵՐՈԳԵՆ (ՏԱՐԱՍԵՌ) ՀԱՄԱԿԱՐԳ, մակրոսկոպիկ անհամասեռ ֆիզքիմ. համակարգ. բաղկացած է բաժանման մակերևույթներով միմյանցից սահմանազատված տարբեր հատկություններով մասերից:

ՀԵՏԵՐՈԳՈՆԻԱ, որոշ անողնաշարների (օր.՝ միջատների) սերունդների հաջորդափոխության ձև, որի դեպքում սեռ. սերունդը փոխարինվում է առանձնյակի կառուցվածքով կամ բազմացման առանձնահատկություններով տարբերվող սեռ. սերնդով: Տես նաև *Մետագենեզ*:

ՀԵՏԵՐՈԳՐԱՖԻԱ (< *հետերո...* և հուն.՝ grapho – գրել), **այլագրություն**, գրի տեսակ, երբ բառերի (կամ նրանց արմատների) մի մասը, երբեմն նաև ամբողջ արտահայտությունները գրում են մեկ, բայց կարդալիս թարգմանում այլ լեզվով: Ծագել է Ներքին Միջագետքում (օր.՝ աքքադ. գրում օգտագործված շումեր. գաղափարագրերը): Հ–ի օրինակներ կան նաև ուրարտ. սեպագրերում, որտեղ շումերագիր բառերի հետ օգտագործվել են աքքադագրեր՝ որպես նախածանցներ, օժանդակ բառեր ևն:

ՀԵՏԵՐՈԴԻՆ (< *հետերո...* և հուն.՝ dinamis – ուժ), բարձր հաճախության ազդանշաններն ըստ հաճախության փոխակերպելիս որպես օժանդակ հաճախությունների տատանումների աղբյուր օգտագործվող սակավահզոր գեներատոր:

ՀԵՏԵՐՈԶԻԳՈՏՈՒԹՅՈՒՆ, հիբրիդ. օրգանիզմին բնորոշ վիճակ, երբ հոմոլոգ ***քրոմոսոմները*** կրում են այս կամ այն գենի տարբեր ***ալելներ***: Տես նաև *Հոմոզիգոտություն*:

ՀԵՏԵՐՈԶԻՍ (հուն.՝ heteroisis – փոփոխություն, փոխակերպում), 1–ին սերնդի հիբրիդների կենսակայունությամբ, պտղատվությամբ և այլ հատկանիշներով ծնող. ձևերից լավագույնին գերազանցելու հատկությունը: 2–րդ և հաջորդող սերունդներում Հ. սովորաբար մարում է: Բույսերի ու կենդանիների Հ. օգտագործում են որպես բերքատվությունը և մթերատվությունը բարձրացնող միջոց:

ՀԵՏԵՐՈԹԵՐՄ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ (< *հետերո...* և հուն.՝ therme – ջերմություն), **տարաջերմ կենդանիներ**, ***փաբարյուն*** (հոմոյոթերմ) ***կենդանիների*** (օր.՝ քնամոլների, արջամկների, գետնասկյուռների) խումբ, որոնց մարմնի կայուն բարձր ջերմաստիճանի շրջանները փոխարինվում են ջերմաստիճանի նվազման շրջաններով քնափության ժամանակ:

ՀԵՏԵՐՈԼԻՏԻԿ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ (< *հետերո...* և հուն.՝ lysis – քայքայում), **տարալույծ ռեակցիաներ**, քիմ. ռեակցիաներ, որոնք ընթանում են առանց քիմ. կապն առաջացնող էլեկտրոն. զույգի տրոհման (նշանակված է 2 կետով)՝ $A:B = A^+ + :B^-$: Տարբերում են նուկլեոֆիլ և էլեկտրոֆիլ Հ.:

ՀԵՏԵՐՈԿԱՐԻՈՆ (< *հետերո...* և հուն.՝ karion – կորիզ), **տարակորիզ**, բջիջ, որի բջջապլազմայում պարունակվում է 2 (և ավելի) ժառանգականորեն միմյանցից տարբերվող կորիզներ: Հանդիպում է անկատար և այլ խմբերի սնկերի մոտ:

ՀԵՏԵՐՈՍՏԻԼԻԱ (< *հետերո...* և հուն.՝ stylos – սյունակ), **տարասյունակություն**, տարբեր երկ–յան սյունակների առկայությունը միևնույն տեսակի առանձին բույսերում (օր.՝ գնարբուկի ծաղիկներում): Հ. դժվարացնում է ծաղիկների ինքնափոշոտումը և նպաստում խաչաձև փոշոտմանը:

ՀԵՏԵՐՈՖՈՒԼԻԱ, տես *Տարատերևություն*:

ՀԵՏԻՆ ՈՒՂԵՂ, գլխուղեղի ցողունի մաս, որի ստորին հատվածը վարոլյան կամուրջն է, վերինը՝ ուղեղիկը:

ՀԵՏԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ՀԱՄԱԲԱԿՈՒԹՅՈՒՆ, **հետարդյունաբերական հասարակություն**, սոցիոլոգիայի և ֆուտուրոլոգիայի (ապագայագիտ–յուն) հասկացություն, որը հաջորդել է արդ. հասյանը և բնորոշում է հաս. զարգացման նոր փուլ: Հ. հ–յան տարբեր հայեցակարգերում, որոնք առաջադրվել են 1960–70–ական թթ–ին (Դ. Բել, Գ. Կան, Զ. Բժեզինսկի, Ա. Թուրեն և ուր.), հաս–յան առաջադիմության հիմք է համարվել տարբեր տեխնոլոգ. դարաշրջանների հերթափոխը, ինչպես նաև աշխ–ի մասնագիտ. և ճյուղ. բաժանումը: Հ. հ–յան մեջ առաջատար դեր ունեն սպասարկման ոլորտը, գիտ–յունը և կրթությունը, կազմ–յուններն իրենց տեղը գիջում են համալսարաններին, իսկ ձեռներեցները՝ գիտնականներին ու մասնագետներին: 1980–ական թթ–ին Հ. հ–յան հայեցակարգը զարգացել է «տեղեկատվական հասարակության» տեսության մեջ (Ե. Մասուդա, Զ. Նեյսբիթ և ուր.), որտեղ արտահայտվում են հաս. կյանքում արտադր–յան նշանակության ածր, տեղեկատվության որոշակիացումն ու սպառումը:

ՀԵՏԻՆՖԱՐԿՏԱՅԻՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ, համալիր ախտանշաններ (սրտապարկի ալերգ. բորբոքում, թոքաբորբ, կրծքամզի բորբոքում), որոնք կարող են ի հայտ գալ սրտամկանի կաթվածով հիվանդների մոտ՝ հիվանդությունն սկսվելուց մի քանի շաբաթ անց: Դրսևորվում է հիմնականում կրծքավանդակի ցավերով, մարմնի ջերմաստիճանի երկարատև բարձրացմամբ:

ՀԵՏԻՆԴԱՆ ԱՐՅՈՒՆԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, կանանց հիվանդություններ՝ պայմանավորված ծննդաբերության ժամանակ և դրանից հետո հեշտոցից ու արգանդից հարարգանդային բջջանքի (պարամետրիտ), արգանդափողերի (աղնեքսիտ), անոթների (թրոմբոֆլեբիտ) և որովայնամզի (պերիտոնիտ) վրա վարակի տարածմամբ: Սանրէների թափանցումն արյուն կարող է հանգեցնել արյան վարակման (ծննդաբերական տենդ): Հ. ա. հ–ի շարքին է դասվում նաև *կաթնագեղձի բորբոքումը*:

ՀԵՏԻՆԴԱՆ ՇՐՋԱՆ, ընկերքն ընկնելուց հետո այն ժամանակամիջոցը (6–8 շաբաթ), որի ընթացքում կնոջ սեռ. օրգանները վերականգնում են մինչհղիության բնականոն վիճակը:

ՀԵՏՄԱՆ (գերմ.՝ Hauptmann – պետ), զորահրամ., 1. մշտ. վարձկան զորքերի հրամանատարի պաշտոն և տիտղոս Լեհաստանում XV դ–ից մինչև 1795–ը: 1505–ին մտցվել է թագավոր. մեծ Հ–ի պաշտոնը, ավելի ուշ՝ նաև Լիտվայի համար: XVIII դ–ում Հ–ի իրավունքները սահմանափակվել են: 2. Դրանցված կազակների ղեկ. Ուկրաինայում XVI դ–ի 2–րդ կեսից: 3. Զորահրամ. Մոլդովայում XVII դ–ում:

ՀԵՏՄՈԴԵՌՆԻԶՄ, **պոստմոդեռնիզմ** (անգլ.՝ postmodernism), XX դ–ի 2–րդ կեսի երևույթների ընդհանուր անվանումը մշակույթում, արվ–ում և գրկ–յան մեջ, որոնք դուրս են ***մոդեռնիզմի*** շրջանակներից: Մշակույթն ընկալելով որպես տեքստային–տեղեկատվ. տարածություն՝ Հ. ուսումնասիրում է անցյալի գեղ. և մշակութ. «ծածկագրերը» հեգնական համադրման միջոցով՝ բացահայտելով դրանց սահմանափակությունը և պայմանականությունը: Փիլ–յան և մշակութաբանության մեջ մերժվում են (Ժ. Դերիդա, Ժ. Լիոտար և ուր.) դաս. լոգոցենտրիզմը, քննադատություններով և ընդգծված հասկացություններով մտածողությունը: Հ–ի գեղ. լեզուն ընդգծված երկրորդային է. գրկ–յան, գեղանկարչության, երաժշտության մեջ, կինոարվ–ում արմատավորված են քաղվածքայնությունը, բազմաոճայնությունը, կոլաժը, ճարտյան մեջ՝ պատմ. ոճերի արտասովոր համադրումը, որի շնորհիվ ձևավորվում է հեգնանքի և գրոտեսկի տարրերով ներթափանցված թատերականացված գեղ. միջավայր:

ՀԵՏՆԱԽՈՒՀԿԱՎՈՐՆԵՐ, փորոտանիների դասի փափկամարմինների ենթադաս: Նախասիրտը փորոքի հետևում է (այստեղից՝ անվանումը): Հայտնի է 4 կարգ, այդ թվում՝ թիոտանիները: Տարածված են ամենուր, հիմնականում՝ ծովերում, հազվադեպ՝ քաղցրահամ ջրերում, որոշները՝ ցամաքում: Հայտնի է մոտ 13 հզ. տեսակ: Հետնախոհկավոր ծով. նապաստակները լաբորատոր կենդանիներ են:

ՀԵՏՊՈԶԻՏԻՎԻԶՄ, հասկացություն, որով բնորոշում են այն փիլ. հայեցակարգերը, որոնք ծագել են XX դ–ի 2–րդ կեսին՝ նորպոզիտիվիզմի քննադատության հետևանքով: Հ–ի հիմն. ուղղություններից են Կ. Պոպպերի քննադատ. ռացիոնալիզմը, «գիտական մատերիալիզմը» (Դ. Արմսթրոնգ), պրագմատիկ. վերլուծությունը (Ու. Քուայն, Մ. Ուայթ), Պ. Ֆեյերաբենդի և Ռ. Ռորտիի հայեցակարգերը, փիլ. ռեալիզմի տարատեսակները:

ՀԵՏՍՏՐՈՒԿՏՈՒՐԱԼԻԶՄ, **պոստստրուկտուրալիզմ** (լատ.՝ poststructuralisme), փիլ. ուղղություն, մշակութ. վերլուծության մեթոդաբանություն. ձևավորվել է 1960–ական թթ–ի 2–րդ կեսին: Ներկայացուցիչներն են Մ. Ֆուկոն, Ժ. Դերիդան, Ռ. Բարտը, Ժ. Լականը, Ժ. Բոդրիարը և ուր.: Հ. քննադատում է նշանի (նշանակյալի ինքնավարությունը նշանակողից) և կառուցվածքի (կասկածի է ենթարկում երկվության, տարբերությունների, կառուցվածքի կենտրոնի գաղափարները) ավանդ. պատկերացումները: Հ. առաջադրել է համատեքստայնության սկզբունքը (ողջ աշխարհն անվերջ և անսահման տեքստ է), որը գեղ. խոսքի սուբյեկտիվ բնույթի մասին պատկերացումներին հակադրում է «հեղինակի մահվան» տեսությունը (Ռ. Բարտ):

ՀԵՏՔԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ, **տրասոլոգիա** (< ֆրանս. trace – հետք և *...լոգիա*), քրեա–

գիտ–յան բնագավառ. ուսումնասիրում է հանցագործությանն առնչվող հետքերը (տեսանելի կամ անտեսանելի), դրանք հայտնաբերելու համար մշակում հատուկ մեթոդներ, ձևեր ու գիտատեխ. միջոցներ՝ անձի կամ օբյեկտի նույնականացման նպատակով: Ըստ քրեագիտ–յան՝ հետքը, լայն առումով, օբյեկտի նյութ. փոփոխությունն է, նեղ առումով՝ մեկ օբյեկտի արտաքին հատկանիշների արտացոլումը մյուսի վրա՝ շփման հետևանքով:

ՀԵՐԱ, արգասավորման և ամուսնական սիրո աստվածուհին հուն. դից–յան մեջ: *Քրոնոսի* և *Հռեայի* դուստրը, *Զևսի* քույրը և կինը, *Հեկատեի* մայրը, Օլիմպոսի թագուհին: Աչքի է ընկել դաժանությամբ, իշխանատենչությամբ և խանդոտությամբ: Համապատասխանում է հռոմ. *Յունոնային*:

ՀԵՐԱԹ, պրովինցիա Աֆղանստանում: Տարածքը՝ 54,7 հզ. *կմ*², բն.՝ 1,78 մլն (2012): Վարչ. կենտրոնը՝ Հերաթ (բն.՝ 436 հզ., 2013):

ՀԵՐԱԹԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ, գործել է XV դ–ում Հերաթում (Աֆղանստան): Մանրանկարիչներից են՝ Քեմալեդդին Բեհզադե, Քասիմ Ալի ևն: Ձեռագիր գրքերի նկարազարդումներին բնորոշ են նուրբ դեկորատիվությունը, բանաստեղծականությունը, գույների ներդաշնակությունն ու նրբությունը:

ՀԵՐԱԼԴԻԿԱ, տես *Զինանշանագիտություն*:

ՀԵՐԱԿԼ II (1720–1798), Վրաց թագավոր, զորավար, դիվանագետ, պետ. գործիչ: Վրաց Բագրատունիների հարստությունից: 1744–ից՝ Կախեթի, 1762–98–ին՝ Քարթլի–Կախեթի թագավոր: Ձգտել է միավորել վրաց. հողերը մեկ միասն. պետության մեջ: 1783–ին կնքել է Գեորգիևյան դաշնագիրը (1783), որով ճանաչել է Ռուսաստանի հովանավորությունը: Նրա օրոք արգելվել է առանց հողատարածքների և ընտանիքից անջատ ճորտերի վաճառքը:

ՀԵՐԱԿԼԵՍ, *Հերկուլես*, անսովոր ուժի տեր հերոս հուն. դից–յան մեջ: *Զևսի* և Թերեի թագուհի Ալքմենեի որդին: Առասպելներում ներկայացվել է որպես մարդկության թշնամիներին, բնության չար ուժերին դիմակայող հերոս: Բազմաթիվ առասպելներից առավել հայտնի ու տարածված է Հ–ի 12 սխրագործությունների մասին գրուցաշարը: Հ. ազատել է *Պրոմեթևսին*: Հ–ի պաշտամունքը տարածված է եղել նաև Հին Հայաստանում, նույնացվել է պատերազմի և քաջության աստված *Վահագնին*:

ՀԵՐԱԿԼԵՍ, *համասփեղություն* երկնքի հս. կիսագնդում՝ հս. թագ, Եզնարած, Վիշապ, Քնար, Աղվես, Աղեղ, Արծիվ, Օձակեր, Օձ համաստեղությունների միջև: Ամենապայծառ աստղը՝ Կոռնեֆորսը, 3–րդ ա. մ. է.: Հ–ում է գտնվում Արեգակն. համակարգի շարժման *ապեքսը*: Հս. մի–ջին լայն–ներից երևում է ամբողջ տարին: Հինահայկ. անունը՝ Վահագն:

ՀԵՐԱԿԼԵՍՅԱՆ ՍՅՈՒՆԵՐ, *Հերակլևի* կանգնեցրած սյուները՝ ըստ հինհուն. դից–յան՝ ի հիշատակ իր թափառումների: Ջիբրալթար նեղուցի հակադիր ափերի 2 ժայռերի հին անվանումը: Փխբ. իմաստով՝ «հասնել մինչև Հերակլեսյան սյուները» նշանակում է հասնել վերջին սահմանին:

ՀԵՐԱԿԼԻԴԵՍ ՊՈՆՏԱՑԻ (մ. թ. ա. 387–312), Պլատոնի աշակերտներից, հայացքներին հատուկ են ատոմիստ. միտումները: Ըստ Հ. Պ–ու՝ ատոմները կառավարվում են համաշխ. մտքի՝ նուսի միջոցով, և նրանց շարժումը քաոսային չէ: Նա առաջինն է առաջարկել աշխարհի արեգակնակենտրոն մոդելի վարկածը:

ՀԵՐԱԿԼԻՈՄ (575–641), Բյուզանդիայի կայսր՝ 610–ից: Գահ է բարձրացել *Փոկասին* տապալելուց հետո: Հիմնադրել է Հերակլիոնների հարստությունը (610–716): 621–ին արշավել է պարսից արքա Խոսրով II–ի դեմ: 628–ին կնքված հաշտությամբ վերականգնել է 591–ի սահմանագիծը: 634–ին Ասորիք են ներխուժել արաբները, 636–ին Յարմուկ գետի մոտ պարտության են մատնել Հ–ի զորքերին, նվաճել Ասորիքն ու Պաղեստինը:

ՀԵՐԱԿԼԻՏԵՑ, Հերակլիտոս Եփեսացի (մ. թ. ա. մոտ 544/540–մ. թ. անհտ), հույն փիլ., քաղ. և կրոն. մտածող՝ մարգարեական հոգեկերտվածքով հոնիական դպրոցի ներկայացուցիչ: Ըստ Հ–ի՝ Տիեզերքը «հավերժ ապրող, համաչափորեն ժայթող և մարող կրակ է», որն օժտված է կյանքով, գիտակցությամբ, նախասահմանված կամքով: Աշխարհում ամեն ինչ անընդհատ փոփոխվում է՝ անցնելով իր հակադրությանը (հնարավոր չէ միևնույն գետը 2 անգամ մտնել): Մշակել է ուսմունք *լոգոսի* մասին: Ճանաչողության ելակետ համարել է արտաքին զգայարանները, միայն մտածողությունն է ընդհանուր բոլորի համար: Հ–ի քաղ. իդեալը «լավագույնի» կառավարումն էր՝ հավերժ. «աստվածային» օրենքի վրա հիմնված:

ՀԵՐԲԱՐԹ (Herbart) Յոհան Ֆրիդրիխ (1776–1841), գերմանացի փիլ., հոգեբան և մանկավարժ, պլյուրալիզմի ներկայացուցիչ (աշխարհի հիմքում բազում անփոփոխ «իրողություններն» են): Ստեղծել է XIX դ–ի գերմ. մանկավարժ. դպրոցը: Առաջ է քաշել ուսուցման 4 աստիճան (սկզբունք)՝ պարզություն, զուգորդություն, համակարգ, մեթոդ: Ըստ Հ–ի՝ փիլ–յան հիմքը փորձն է, իսկ փիլ–յունը պետք է զբաղվի «փորձի հասկացությունների մշակմամբ»: Հ. ձևական գեղագիտ–յան հիմնադիրն է:

ՀԵՐԲԱՐԻՈՒՄ (լատ՝ herbarium, < herba – խոտ, բույս), հատուկ հավաքած և չորացրած բույսերի հավաքածու, նաև դրա պահատեղը: Հ. կարող է լինել ընդհ. (որոշակի տարածքի բույսերի հավաքածու) և հատուկ (սննդ., տեխ., դեղորայք. և այլ բույսերի): Առաջին Հ–ներն ստեղծվել են Վերածննդի դարաշրջանում: Աշխարհում կա մոտ 1000 Հ., որոնցում պահպանվում են բույսերի շուրջ 150 մլն նմուշներ: Առավել խոշորներն են Կյուի (Մեծ Բրիտանիա) բուսաբ. այգու Հ. (ավելի քան 6 մլն թերթ), ՌԳԱ բուսաբ. այգու (Ս. Պետերբուրգ) Հ–ները (ավելի քան 6 մլն թերթ): Հայաստանի բուսաշխարհի առաջին Հ. կազմել է ֆրանսիացի բուսաբան Ժ. Պ. Տուռնեֆորը 1700–ին, սակայն հավաքածուն երկրից տարվել է: Արժեքավոր է ՀՀ ԳԱԱ բուսաբ–յան ինստ–ի Ա. Շելկովնիկովի կազմած Հ. (շուրջ 200 հզ. թերթ, 130 հզ. բույս):

ՀԵՐԲԵՐԱ (Herbera), աստղածաղկազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 70 տեսակ՝ Աֆրիկայում և Ասիայում: Խոշորածաղիկ երիցուկ հիշեցնող տարբեր գույների ծաղիկներով սորտերն օգտագործում են արդ. ծաղկաբուծության մեջ:

ՀԵՐԲԵՐՏ (Herbert) Ուոլթեր Ուիլյամ (1934–2007), անգլիացի բևեռախույզ: 1966–75–ին ղեկավարել է 3 գիտարշավ Գրենլանդիայում: 1968–69–ին գլխավորել է արշավախումբ, որն 1–ին անգամ շնասահնակներով Ալյասկայից Հս. բևեռով հասել է Շպիցբերգեն:

ՀԵՐԲԻՑԻԴՆԵՐ (< լատ. herba – խոտ և caedo – սպանել), պեստիցիդների խմբի քիմ. պատրաստուկներ, որոնք նախատեսված են անցանկալի, հիմնականում՝ մոլախոտ. բուսականության ոչնչացման համար: Ներառում են *արբորիցիդներ* և *ալգիցիդներ*: Լինում են համատարած և ընտրողական ազդեցության Հ.: Հ–ի ազդեցության ընտրողականությունը որոշվում է պատրաստուկի քիմ. բաղադրությամբ, ձևով ու չափաքանակով, ցանքսերի մշակման եղանակներով ու ժամկետներով և այլ առանձնահատկություններով:

ՀԵՐԴԱԼ (Herdal) Հարալդ (1900–1978), դանիացի գրող: Հեղինակ է «Նոր ոգի» (1929), «Էրոսն ու մահը» (1931), «Մերկ բանաստեղծություններ» (1933) և այլ բանաստեղծությունների ժող–ների, «Այնուամենայնիվ արժե ապրել» (1934), «Չինազանդեցված մարդը» (1949) վեպերի, նաև ինքնակենսագր. գրքերի:

ՀԵՐԴԵՐ (Herder) Յոհան Գոթֆրիդ (1744–1803), գերմանացի փիլ., գեղագետ, գրող, քննադատ: Քարոզել է արվ–ի ազգ. յուրօրինակությունը, տարբեր դարաշրջանների մշակույթի և պոեզիայի պատմ. յուրակերպությունն ու համարժեքությունը: «Գաղափարներ մարդկության պատմության փիլիսոփայության շուրջ» (մաս 1–4, 1784–91) երկում անդրադարձել է նաև հայերին ու Հայաստանի պատմությանը, հայ–ը համարել է «ինադարյան հրաշալի լեզու»: Հեղինակ է նաև «Ուսումնասիրություն լեզվի ծագման մասին» (1772) աշխ–յան: Հ. ստեղծել է ժող. պոեզիայի տեսությունը, որը դարձել է *«Գրոհ և փոթորիկի»* գր. մանիֆեստը, հավաքագրել և թարգմանել է ժող. երգեր:

ՀԵՐԵՏԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ (հուն.՝ airesis – ընտրություն, հատուկ դավանանք), հոսանք քրիստոնեության մեջ, որը շեղվում է պաշտոն. եկեղեցու սահմանած դոգմաներից և պաշտամունքից: Առավել տարածված են եղել նիկոլականները, մոնտանականները, *մարկիոնականությունը*, *արիոսականությունը*, *նեստորականությունը*, բորբորիտները, մծղնեությունը, Հայաստանում՝ պավլիկյանները և թոնդրակյանները: Փխբ. իմաստով՝ շեղում հաս–յան մեջ ընդունված անվիճելի ինչ–որ բանից, մոլորություն:

ՀԵՐԵՐՈՆԵՐ (օվահերերո), բանտու խմբի ժողդ Նամիբիայում (164 հզ.), Անգոլայում (135 հզ.), Բոտսվանայում (21 հզ.) և ՀԱՀ–ում: Ընդհ. թիվը՝ 320 հզ. (2000): Հիմնականում բողոքական են, մի մասը պահպանում է ավանդ. հավատալիքները:

ՀԵՐԵՐՈՆԵՐԻ ԵՎ ՀՈՏԵՆՏՈՏՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ 1904–07, Նամիբիայի բնիկների ապստամբությունը գերմ. տիրապետության դեմ: Սկսել են *հերերոները* 1904–ի հունվ. 12–ին, ազատագրել երկրի կենտր. մասը: Գերմանացի գաղութարարներն ապրիլին պարտության են մատնել նրանց: 1904–ի հոկտ. 3–ին ապստամբել են *հոտենտոտները*, որոնք իրենց առաջնորդի մահից (1905) հետո բաժանվել են մանր խմբերի և շարունակել պայքարը մինչև 1907–ը:

ՀԵՐԵՖՈՐԴՅԱՆ ՏԱՎԱՐ, մսատու ցեղ: Բուծվել է XVIII դ–ում Անգլիայի Հերե–

ֆորդշիր (Հերեֆորդ) կոմսությունում՝ տեղ. տավարի ընտրության և զույգընտրության միջոցով: Յուլերի կ. զ.՝ 850–1000, կովերինը՝ 550–650 *կգ*: 1928-ին ներբերվել է ԽՍՀՄ և արդ. տրամախաչմամբ ստացվել ղազախ. սպիտակագլուխ տավարի ցեղը:

ՀԵՐԹԵՎՅԱՆ Շանթ Կարապետի (1922–1985), նկարիչ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1983): Պրոֆ. (1983): Հեղինակ է կոմպոզիցիոն թեմատիկ կտավների («Մարտից հետո», «Էտապ»), դիմանկարների («Ավետիք Իսահակյան», «Պետրոս Ադամյան» ևն), բնապատկերների («Գարուն», «Արագած»), նատյուրմորտների («Ծաղիկներ», «Դեղձեր»):

ՀԵՐԻՆԳ (Hering) Էվալդ (1834–1918), գերմանացի ֆիզիոլոգ: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1905): Նկարագրել է շնչառության ռեֆլեքս. փոփոխությունները՝ թափառող նյարդը գրգռելիս: Գունային տեսողության տեսություններից մեկի հեղինակն է:

ՀԵՐԻՈ (Herriot) Էդուար (1872–1957), ֆրանսիացի պետ. և քաղ. գործիչ: 1924–25, 1926 և 1932-ին՝ վարչապետ: Հ-ի կառ-յունը դիվանագիտ. հարաբերություններ է հաստատել (1924) և չհարձակման պայմանագիր ստորագրել (1932) ԽՍՀՄ-ի հետ: Խորհրդարանի նախագահ՝ 1947–54-ին, ֆրանս. արմատ. կուս-յունների առաջնորդ:

ՀԵՐԿՈԼԱՆՈՒՄ (Herculaneum), հինհռոմ. ք. Իտալիայում՝ այժմյան Նեապոլի մոտ: 79-ին Վեզուվի ժայթքման հետևանքով ավերվել է ու ծածկվել հրաբխ. լավայի ու մոխրի 10–12 *մ*-անոց շերտով: Պեղվում է XVIII դ-ից: Բացվել են հրապարակը, սյունասրահը, 3-հզ-տեղանոց թատրոնը, 2 բաղնիք, մարզադպրոց ևն:

ՀԵՐՀԵՐ, գետ ՀՀ Վայոց ձորի մարզում, Արփայի աջ վտակը: Սկիզբ է առնում Թեքսարի լ–շղթայի հս–արլ. լանջերից՝ 3040 *մ* բարձր–ից: Երկ.՝ 28 *կմ*, ավազանը՝ 174 *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 1,89 *մ³/վ*, հոսքը՝ 6 մլն *մ³*: Վերին հոսանքում առաջացնում է V-աձև հովիտ: Մնումը խառն է, վարքումը՝ մայիսին: Ջրերն օգտագործում են ոռոգման նպատակով:

ՀԵՐՀԵՐԻ ՍՈՒՐԲ ՍԻՈՆ ԱՆԱՊԱՏ, ճարտ. համալիր ՀՀ Վայոց ձորի մարզի Հերհեր գ–ից մոտ 1 *կմ* հս–արլ.՝ բլրի գագաթին: Հիմնադրվել է վաղ միջնադարում: Սբ Սիոն եկեղեցին միանավ, թաղածածկ, 2 կիսաշրջանաձև խորաններով հորինվածք է, որին հս–ից կից է մատուռ, հվ–ից՝ Սբ Աստվածածին եկեղեցին (1283): XIV դ–ում համալիրը նորոգվել է, բակում և շուրջը կան բազմաթիվ խաչքարեր (XIII–XVII դդ.):

ՀԵՐՁԱՆՑՔ, մանրադիտակային անցքեր բույսերի տերևների և խոտաբույսերի ցողունների մաշկահյուսվածքներում, որոնք բացվելով ու փակվելով (Հ–ի շարժ) կարգավորում են գազափոխանակությունն ու գոլորշիացումը:

ՀԵՐՄԱ (հուն.՝ hermes), դիմաքանդակով ավարտվող քառանիստ սյուն Հին Հունաստանում՝ նախ *Հերմեսի* (այստեղից էլ՝ անունը), ապա՝ այլ աստվածների, մ. թ. ա. V դ–ից՝ նաև պետ. գործիչների, փիլ–ների և ուր. պատկերներով (երբեմն՝ նաև երկկողմանի դիմաքանդակներով): Գործածվել է որպես սահմանանիշ, ճանապարհների նշաձող ևն:

ՀԵՐՄԱՆ (Hermann) Ալեքսանդր Դիլս (1848–1922), գերմանացի բանասեր, անտիկ շրջանի պատմաբան: Բեռլինի ԳԱ ակադ. (1881), ՌԳԱ արտ. թղթ. անդամ (1896): Հեղինակ է «Պարմենիդես» (1897), «Հերակլիտ» (1901) և այլ աշխ–ների:

ՀԵՐՄԱՆ (Herman) Ամտալ (1851–1926), հունգար ազգագրագետ, բանասեր, հայագետ: Փիլ. գիտ. դ–ր, պրոֆ.: «Հունգարիայի ազգագրական ընկերության» (ուներ հայկ. բաժին) հիմնադիրը (1889), «Էթնոգրաֆիա» (1897–1922, գերմ.) պարբ–ի, Գեղալայի *«Արմենիա»* (հունգ.) հանդեսի խմբ.: Հ. նպաստել է Գեղալայի Հայկ. թանգարանի (պատվ. տնօրեն) ստեղծմանն ու հարստացմանը: Հեղինակ է հայագիտ. աշխ–ների («Գնչուները Հայաստանում 500 տարի առաջ», 1884, ևն) և հոդվածների («Հայերը Թուրքիայում», 1888, № 11–12, ևն):

ՀԵՐՄԱՆ Լուդիմար (1838–1914), գերմանացի ֆիզիոլոգ: Առաջարկել է նյարդ. հաղորդականության կենսաէլ. տեսությունը: Փորձարար. եղանակով որոշել է դրդման տարածման արագությունը մկաններով:

ՀԵՐՄԱՆ ՌԱՅԽԵՆԱՈՒՅԻ, Հերման Անզոր (Hermann von Reichenau, Hermannus Contractus, 1013–1054), գերմանացի բենեդիկտյան վանական, պատմաբան, աստղագետ, երաժշտության տեսաբան: Հեղինակ է «Համաշխարհային տարեգրություն» երկի, որտեղ նկարագրել է մ. թ. սկզբից մինչև 1054-ի առավել հայտնի իրադարձությունները, «Երաժշտություն» տրակտատի (զարգացրել է ինտերվալի և լադի մասին ուսմունքը, առաջ քաշել նոտագրության տառային սեփ. համակարգ), «Խավարումների մասին», «Աստրոլաբի օգտագործման մասին» աստղագիտ. աշխ–ների:

ՀԵՐՄԱՆՍՈՆ (Hermansson) Կառլ Հենրիկ (1917–2016), շվեդ. բանվ. շարժման գործիչ: 1941-ից՝ Շվեդիայի կոմկուսի (ՇԿԿ), 1946-ից՝ ՇԿԿ ԿԿ և քաղբյուրոյի անդամ: 1946–57-ին՝ ՇԿԿ «Վոր տիդ» («Vor tid») ամսագրի, 1959–62-ին՝ «Նյու դագ» («New dag») թերթի գլխ. խմբ.: 1953–61-ին՝ ՇԿԿ ԿԿ քարտուղար, 1964–75-ին՝ Ձախ կոմունիստների (մինչև 1967-ը՝ ՇԿԿ) նախագահ:

ՀԵՐՄԱՖՐՈԴԻՏԻԶՄ (հին հուն. *Հերմաֆրոդիտոս* աստծու անունով), **կինայրություն, երկսեռություն**, արական և իգական սեռի օրգանների առկայությունը միևնույն անհատի մոտ: Տարբերում են բնական Հ. (հիմնականում՝ անողնաշարների մոտ) և ախտաբան. (հանդիպում է կենդ. աշխարհի բոլոր խմբերում, նաև մարդկանց մոտ):

ՀԵՐՄԱՖՐՈԴԻՏՈՍ, անսովոր գեղեցկության տեր պատանի հուն. դից–յան մեջ: *Հերմեսի* և *Աֆրոդիտեի* որդին: Սալմակիս հավերժահարսը սիրահարվել է Հ–ին, որի խնդրանքով աստվածները նրան միաձուլել են Հ–ի հետ երկսեռ մի էակի մեջ (այստեղից էլ՝ *հերմաֆրոդիտիզմ*):

ՀԵՐՄԵՍ, խաշնարածների և անասնապահների աստվածը հուն. դից–յան մեջ, ավելի ուշ՝ *Օլիմպոսի* աստվածների սուրհանդակը, նաև վաճառականների ու ճանապարհորդների հովանավորը: *Հերմաֆրոդիտոսի* հայրը: Հ. ննջեցյալների հոգիներին ուղեկցում էր Հադեսի թագավորություն: Համապատասխանում է հռոմ. *Մերկուրիոսին*:

ՀԵՐՄԵՍ ԵՌԱՄԵԾ Տրիսմեգիստ, դից. կերպար, որը համատեղում էր հինհուն. Հերմես և հինեգիպտ. Թոտ աստվածությունների հատկանիշները: Հ. Ե–ի անունով կոչվել է *հերմետիզմ* կրոնափիլ. հոսանքը: Հին Հունաստանում «Հ. Ե.» անվանել են հույն փիլ–ներին և ալքիմիկոսներին:

ՀԵՐՄԵՄՆԵՐ, լվիճների ընտանիք: Երկ.՝ 0,5–2,5 *մմ*: Հայտնի է մոտ 40 տեսակ: Տարածված են առավելապես Հս. կիսագնդի բարեխառն գոտում, Ռուսաստանում՝ ավելի քան 20 տեսակ: Վնասում են ասեղնատերևազգիները:

ՀԵՐՄԵՏԻԶՄ, 1. հելլենիզմի ժամանակաշրջանի կրոնափիլ. հոսանք, որը համադրել է հուն. փիլ–յան, խալդիական աստղաբանության, պարսկ. մոգության, եգիպտ. ալքիմիայի տարրեր: Ներկայացված է մեծաթիվ ստեղծագործություններում, որոնք վերագրվում են *Հերմես Եռամեծին* («Հերմետիկական կորպուս», II–III դդ.): Լայն իմաստով՝ օկուլտիստ. գիտ–ների համալիր (մոգություն, աստղաբանություն, ալքիմիա): Հ–ի ավանդույթը շարունակվել է եվրոպ. Վերածննդի շրջանում (Մ. Ֆիչինո, Ջ. Պիկո դելլա Միրանդոլա), Կ. Ագրիպոսի, Պարացելսի աշխ–ներում, ազդել Ջ. Բրունոյի և Ի. Նյուտոնի ստեղծագործության վրա: 2. (Իտալ.՝ poesia ermetica – հերմետիկ, անթափանցելի պոեզիա) ուղղություն 1920–40-ական թթ–ի իտալ. պոեզիայում (Է. Մոնտալե, Ջ. Ունգարետտի): Գլխ. դրույթը բանաստեղծ. բառի խորհրդանշան. հնարավորությունների առավելագույն դրսևորումն է՝ բարդացված համանմանությունների, զուգորդումների և ռիթմի միջոցով: Միտված է մարդու ներաշխարհի բացահայտմանը:

ՀԵՐՄԼԻՆ (Hermlin) Ստեֆան (1915–1997), գերմանացի գրող: 1937–45-ին՝ վտարանդի: Հեղինակ է «Տասներկու բալլադ մեծ քաղաքների մասին» (1945) բանաստեղծությունների, «Պատմվածքներ» (1970), «Ընթերցումներ. 1960–71 թթ.» (1973) գեղ–քննադատ. էսսեների ժող–ների, «Երեկոյան լույսը» (1979) ինքնակենսագր. վիպակի:

ՀԵՐՄՈՆԻ ՎԱՆՔ, **Կնեվանք**, ճարտ. համալիր ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս գ–ի ձորալանջին (936, հիմնադիրներ՝ Սյունյաց Սմբատ իշխան, Հակոբ եպս.): Վանքի ուղղանկյուն հատակագծով պարսպապատ տարածքում են 1 զույգ մույթերով եռանավ բազիլիկ Սբ Գրիգոր եկեղեցին (XVII դ.), երբեմնի համալիրի շինությունների մնացորդներ:

ՀԵՐՄՈՆԻ ՎԱՆՔԻ ԴՊՐՈՑ, գործել է Հերմոնի վանքին կից, հայտնի է դարձել XIV դ–ի 2–րդ քառորդում՝ *Տիրապուր Կիլիկեցու* վարդապետության օրոք: Գործել է Գլաձորի համալսարանին զուգահեռ: Սաներից հայտնի է *Հովհաննես Հերմոնեցին*, որը 1441-ին Էջմիածնում վերահաստատել է (Թովմա Մեծոփեցու հետ) Ամենայն հայոց կաթողիկոսարանը: Հերմոնի վանքում շուրջ 100 տարի գործել է գրչության դպրոց (պահպանվել են 10–ից ավելի ձեռագրեր):

ՀԵՐՄՈՍԻԼԻՈ (Hermosilio), ք. Մեքսիկայում, Սոնորա նահց–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 784 հզ. (2010): Տրանսպորտ. հանգույց է:

ՀԵՐՇԲԱԽ (Herschbach) Դադլի Ռոբերտ (ծ. 1932), ամերիկացի ֆիզքիմիկոս: Աշխ–ները վերաբերում են քիմ. փոխարկումների տարրական փուլերի մեխանիզմներին:

Նոբելյան մրց. (1986, *Լի Յանի* և Ջ. *Պոլանիի* հետ):

ՀԵՐՇԵԼ (Herschel) Ջոն Ֆրեդերիկ Ուիլյամ (1792–1871), անգլիացի աստղագետ: *Ատղալուսաչափության* հիմնադիրներից:

Ու. *Հերշելի* որդին: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1826): Կատարել է Հս. երկնքի աստղերի դիրքերի ու փայլերի դիտումներ, հետազոտել է *կրկնակի աստղերը*, կազմել *միգամածությունների* ու *աստղակույտերի* աստղացուցակ (1864):

ՀԵՐՇԵԼ Ուիլյամ (Ֆրիդրիխ Վիլհելմ, 1738–1822), անգլիացի աստղագետ: Աստղ. աստղագիտ-յան հիմնադիր: Ջ. *Հերշելի* հայրը: Իր պատրաստած աստղադիտակներով կատարել է աստղ. երկնքի համակարգված դիտարկում, հետազոտել *աստղակույտերը, կրկնակի աստղերը, միգամածությունները,* կառուցել է *Գալակտիկայի* առաջին մոդելը, բացահայտել Արեգակի շարժումը տարածության մեջ, հայտնաբերել է *Ուրանը* (1781), նրա 2 (1787) և Սատուռնի 2 (1789) արբանյակները:

ՀԵՐՇԻ (Hershey) Ալֆրեդ Դեյ (1908–1997), ամերիկացի գենետիկ և վիրուսաբան: Ապացուցել է բակտերիոֆագերի ռեկոմբինացիայի հնարավորությունը և նուկլեինաթթվի որոշիչ դերը վիրուս. վարակի մեջ:

Նոբելյան մրց. (1969, Մ. *Դելբրյուկի* և Ս. Է. *Լուրիայի* հետ):

ՀԵՐՇՏԵՅՆ (Գերշտեյն) Սեմյոն Սոլոմոնովիչ (ծ. 1929), հրեա ֆիզիկոս-տեսաբան: ՌԳԱ ակադ. (2003, թղթ. անդամ՝ 1985–ից): Յ. Մ. *Զելդովիչի* հետ բացահայտել է *թույլ փոխազդեցություններում* վեկտոր. հոսանքի պահպանության օրենքը, մյուոնային նեյտրինոյի զանգվածի վերին սահմանը, զարգացրել միջմոլ. երևույթների տեսությունը:

ԽՍՀՄ Պետ. (1986), Ի. Յ. Պոմերանչուկի անվ. (2011) մրց-ներ, ՌԳԱ Է. Դ. Լանդաուի անվ. մեդալ (2013):

ՀԵՐՈ Հանրի (Թեքեյան Հրանտ, 1894–1981), գեղանկարիչ: Անդրադարձել է ավանդույթներին ու բնությանը, պատկերել է հրեշտակակերպ պատանիների ու աղջիկների («Հրեշտակը ծաղիկների հետ», 1934, ևն): Հիմնադրել է «Նկարչություն և պոեզիա» (1935), ապա՝ «Նոր ուժեր» և «Նոր սերունդ» խմբակցությունները, «Օնիրիստ» (1949) խմբավորումը:

ՀԵՐՈԴՈՏՈՍ (Herodotos), **Հերոդոտոս Հալիկառնասցի** (մ. թ. ա. մոտ 484–մոտ 425), հույն պատմիչ, հռչակվել է որպես Պատմահայր: Իր «Պատմություն» աշխատության մեջ շարադրել է հույն-պարսկ. պատերազմների պատմությունը: Հ. առաջին պատմիչն է, որը անկողմնակալորեն, որոշակի պլանով գրել է համաշխ. պատմությունը՝ օգտագործելով բազմապիսի նյութեր (գրավոր և բանավոր աղբյուրներ, վիմագիր արձանագրություններ, ճանապարհորդությունների ընթացքում քաղած տեղեկություններ, լոգոգրաֆների գործեր ևն): Հ. իր «Պատմության» մեջ արժեքավոր տեղեկություններ է հաղորդել Հայաստանի և հայ ժողդ-ի մասին:

ՀԵՐՈԼԴ (Hérold) Ֆերդինան (1791–1833), ֆրանսիացի կոմպոզիտոր: Հեղինակ է «Հենրիխ V-ի պատանեկությունը» (1915), «Ցամպա կամ Մարմարե հարսնացու» (1831) օպերաների, «Աստոլֆ և Ջոկոնդա կամ Արկածներ որոնողները», «Լուսնոտը» (երկուսն էլ՝ 1827) բալետների, նաև լար. կվարտետների, դաշնամուր. գործերի, երգերի:

ՀԵՐՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՑԻ, մոտ I դ-ի հույն գիտնական: Համակարգված շարադրել է կիրառ. մեխանիկայի և մաթ-ի վերաբերյալ անտիկ աշխարհի հիմն. նվաճումները: Ստեղծել է մի շարք գործիքներ և ավտոմատներ: Երկրչափ-յան մեջ հայտնի է *Հերոնի բանաձևը*:

ՀԵՐՈՆԻ ԲԱՆԱՁԵՎ, եռանկյան մակերեսն իր 3 կողմերով արտահայտող բանաձև՝

$$S = \sqrt{p(p-a)(p-b)(p-c)},$$

որտեղ a-ն, b-ն, c-ն կողմերի երկ-յուններն են, իսկ

$$P = \frac{a+b+c}{2}$$ -ը կիսապարագիծն է:

Կոչվել է *Հերոն Ալեքսանդրիացու* անունով:

ՀԵՐՈՍ, այն անձնավորությունը, որը սխրանք է կատարում՝ դրսևորելով անհատ. արիություն, տոկունություն և ինքնազոհության պատրաստակամություն: ՀՀ բարձրագույն կոչումը *Հայաստանի Ազգային հերոսն* է. սահմանել է ՀՀ ԱԺ-ն 1994-ի մարտի 29-ին: ԽՍՀՄ-ում շնորհվել է ԽՄ հերոսի պատվ. կոչում: Տես նաև *Աշխատանքի հերոս*, *Խորհրդային Միության հերոս*, *Սոցիալիստական աշխատանքի հերոս*:

ՀԵՐՈՍ ՔԱՂԱՔ, պատվ. կոչում. շնորհվել է ՀՄՊ-ի ժամանակ իրենց հերոս. դիմադրությամբ հռչակված Մոսկվա, Ս. Պետերբուրգ, Կիև, Օդեսա, Սևաստոպոլ, Վոլգոգրադ, Մինսկ, Կերչ, Նովոռոսիյսկ, Տուլա ք-ներին: Կոչումը սահմանվել է 1965-ի մայիսի 8-ի ԽՍՀՄ ԳԽ նախագահության հրամանագրով: Հ. ք-ում կանգնեցվել է կոթող՝ Լենինի շքանշանի, «Ոսկե աստղ» մեդալի և ԽՍՀՄ ԳԽ նախագահության հրամանագրի տեքստի պատկերներով:

ՀԵՐՈՍՏՐԱՏՈՍ (Herostratos), եփեսոսցի հույն, որն իր անունն անմահացնելու համար մ. թ. ա. 356-ին այրել է հայտնի Արտեմիսի տաճարը (*աշխարհի յոթ հրաշալիքներից*): Ըստ ավանդության՝ տաճարն այրվել է Ալեքսանդր Մակեդոնացու ծննդյան գիշերը: Հոնիական քաղաքների բնակիչները որոշել են մոռացության տալ Հ-ի անունը, սակայն նրա մասին հիշատակել է հույն պատմիչ և հռետոր Թեոպոմպոս Քիոսցին: Փխր. իմաստով՝ փառամոլ, փառասեր:

ՀԵՐՈՍՈՒԹՅՈՒՆ, հաս. առումով՝ մարդու ակնառու գործունեություն, որը պահանջում է անձն. քաջություն, տոկունություն, անձնազոհության պատրաստակամություն: Հ-յան գաղափարներն սկզբնապես արտացոլվել են տարերայնորեն ձևավորված զանգված. բարոյական գիտակցության, ժող. բանահյուսության մեջ (մասնավորապես՝ հերոս. էպոսում), իսկ հետագայում դարձել են գեղ. գրկ-յան ու արվ-ի, բարոյագիտ-յան, գեղագիտ-յան, սոցիոլոգիայի, հոգեբ-յան ուսումնասիրության առարկա: Որոշ մտածողներ (Ջ. *Վիկո*, Գ. *Հեգել*) Հ. բացառապես կապել են «հերոսական դարաշրջանի» (անտիկ հասյան) հետ: Լուսավորիչները (Ժ-Ժ. *Ռուսո*, Գ. *Լեսինգ*, Յ. Ֆ. *Շիլլեր*) և հեղ. ռոմանտիզմի ներկայացուցիչները (Ջ. *Բայրոն*, Կ. *Ռիկլ*, Ջ. *Մաձինի*) ստեղծել են մարդկանց «բնական» հավասարության համար պայքարող հերոս. անձնավորության գաղափարը, որը հետագայում զարգացրել են XX դ-ի մտածողները իրենց ուսմունքներում: Հ. կատարած անձինք *հերոսներ* են: Տես նաև *Հայաստանի Ազգային հերոս*:

ՀԵՐՈՍՈՒՀԻ ՄԱՅՐ, պատվ. կոչում ԽՍՀՄ-ում 1944–91-ին: Շնորհվել է 10 և ավելի երեխաներ ծնած ու դաստիարակած մայրերին: Հ. մ. կոչմանն արժանացած մայրերին տրվում էր «Հերոսուհի մայր» շքանշան և ԽՍՀՄ ԳԽ նախագահության շնորհագիր:

ՀԵՐՈՎԴԵՍ I Մեծ (Հերովդես Ագրիպպիաս, մ. թ. ա. մոտ 73–74), Հրեաստանի (Հուդայի) թագավոր՝ մ. թ. ա. 40-ից (փաստացի՝ 37-ից): 37-ին հռոմ. զորքերի օգնությամբ գրավել է Երուսաղեմը, 40-ին՝ Հռոմի ծերակույտը Հ. I-ին հռչակել է Հրեաստանի թագավոր և «Հռոմի բարեկամ»: Ըստ Ավետարանի՝ նրա օրոք է ծնվել Քրիստոսը, և Հ. I, վախենալով նրա վերաբերյալ մարգարեությունից, հրամայել է կոտորել 2 տարեկանից փոքր բոլոր մանուկներին:

ՀԵՐՈՓԻԼՈՍ (մ. թ. ա. մոտ 300–մ. թ. անհտ), հույն բժիշկ, Ալեքսանդրյան բժշկ. դպրոցի հիմնադիրներից: Անատոմիան ուսումնասիրելու նպատակով առաջինն է հերձել մարդկային դիակները: Աշխ-ները չեն պահպանվել:

ՀԵՐՊԵՍԱՅԻՆ ՎԱՐԱԿ (< հուն. herpes – որքին), մարդու և կենդանիների (խոզեր, կապիկներ ևն) հիվանդություններ, որոնց հարուցիչները հերպեսվիրուսներն են: Մարդկանց Հ. վ-ի (հերպես հասարակ, բշտիկավոր որքին ևն) դեպքում ախտահարվում են մաշկը (հաճախ՝ շրթունքների), ըմպանի, աչքերի, միզասեռ. օրգանների լորձաթաղանթները, որոնց բնորոշ են բշտակացանը: Կենդանիների Հ. վ-ի շարքից են խեկ-ների քթաշնչափողաբորբը (ռինոտրաքեիտ), ձիերի քթաթոքաբորբը (ռինոպնևմոնիա), Աուեսկիի հիվանդությունը ևն:

ՀԵՐՍԻ (Hersey) Ջոն Ռիչարդ (1914–1993), ամերիկացի գրող: Հեղինակ է հակաֆաշիստ. թեմայով «Պատերազմի սիրահարը» (1959), ազատության և պարտքի, իշխանության և բռնության մասին «Դավադրություն» (1972) այլաբան., «Ընկուզափայտե դուռ» (1977) վեպերի, «Երեխաների գնորդը» (1960) հակաուտոպիստ. սատիր. գործի:

ՀԵՐՑ (Hertz) Գուստավ (1887–1975), գերմանացի ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1958): Հետազոտել է էլեկտրոնների բախումն ատոմների հետ (*Ֆրանկ–Հերցի փորձ*), մշակել իզոտոպների բաժանման դիֆուզային մեթոդը:

Նոբելյան (1925, Ջ. *Ֆրանկի* հետ), ԽՍՀՄ Պետ (1951) մրց-ներ:

ՀԵՐՑ Հենրիխ Ռուդոլֆ (1857–1894), գերմանացի ֆիզիկոս: *Էլեկտրադինամիկայի* հիմնադիրներից: Փորձով հաստատել է (1886–89) էլեկտրամագնիս. ալիքների գոյությունը (օգտագործել է իր պատրաստած վիբրատորը՝ *Հերցի վիբրատոր*) և ապացուցել էլեկտրամագնիս. և լուս. ալիքների հիմն. հատկությունների նույնությունը, այսինքն՝ լույսի էլեկտրամագնիս. բնույթը: Զարգացրել է Մաքսվելի տեսությունը և *Մաքսվելի հավասարումները* բերել համաչափ տեսքի: Առաջինն է դիտել ու նկարագրել արտաքին *լուսաէֆեկտը*: Ուսումնասիրել է *կաթոդային ճառագայթների* հատկությունները: Մեխանիկային վերաբերող աշխ-ներում տվել է առաձգ. գնդերի հարվածի տեսությունը: Ելնելով իր մշակած միասնական սկզբունքից (*Հերցի սկզբունք*)՝ ստացել է մեխանիկայի ընդհ. թեորեմները: Նրա անունով է կոչվել տատանումների հաճախության միավորը՝ *Հերց*:

ՀԵՐՑ, *Հց* (ֆիզ.), հաճախության միավորը ՄՄՀ և ՍԳՎ (CGS) միավորների համակարգում. հավասար է այն պարբերի. շարժընթացի հաճախությանը, երբ 1 *վ*-ում կատարվում է 1 ամբողջ շրջան: Կոչվել է Հ. *Հերցի* անունով:

ՀԵՐՑԲԵՐԳ (Herzberg) Գերհարդ (1904–1999), գերմանացի ֆիզքիմիկոս և ֆիզիկոս: 1935–ից՝ Կանադայում: Աշխ-ները վերաբերում են մոլ-ների և ազատ ռադիկալների սպեկտրների հիմնարար ուսումնասիրությանն ու դրանց էլեկտրոն. կառուցվածքների հաստատմանը: Նոբելյան մրց. (1971):

ՀԵՐՑԻ ՄԿԶԲՈՒՆՔ, փոքրագույն կորության սկզբունք, մեխանիկայի վարիացիոն սկզբունքներից, ըստ որի՝ ակտիվ (տրված) ուժերի բացակայության դեպքում կինեմատիկորեն հնարավոր բոլոր հետագծերից իրականը փոքրագույն կորություն ունեցողն է: Կիրառել է Հ. *Հերցը*՝ իր մեխանիկան կառուցելու համար:

ՀԵՐՑԻ ՎԻԲՐԱՏՈՐ, *Հերցի տատանակ*, ծայրին մետաղե գնդիկներ ունեցող ձողի տեսքով պարզագույն *անտենա*, որի ճեղքում (*կայծային բացակ*) տեղադրված է էլ. տատանումների աղբյուր (օր.՝ *Ռումկորֆի կոճը*): Օգտագործել է Հ. *Հերցը* (1888)՝ էլեկտրամագնիս. ալիքների գոյությունը հաստատող փորձերում:

ՀԵՐՑԼ (Herzl) Թեոդոր (Բենիամին Զեեֆ, 1860–1904), հրեա գրականագետ, հաս. գործիչ, *սիոնիզմի* հիմնադիրը («Հրեական պետություն», 1896): 1897–ին, «հրեական օջախ» ստեղծելու նպատակով, Պաղեստինում հրավիրել է համաժողով (նախագահել է հետագա 5 համաժողովները): 1897–ից՝ Համաշխ. սիոնիստ. կազմյան նախագահ: 1899–ին Լոնդոնում հիմնել է «Հրեական գաղութաբնակեցման ընկերություն» հիմնադրամ, որն զբաղվել է Պաղեստինում հողատարածքներ գնելու միջոցներ հավաքելով: Հեղինակ է «Փիլիսոփայական պատմվածքներ» (1909) ժող-ի, «Նոր Գետտո» (1897) դրամայի, «Altneuland» (1902) վեպ-էպոպեայի:

ՀԵՐՑՇՊՐՈՒՆԳ (Hertzsprung) Էյնար (1873–1967), դանիացի աստղագետ: Աստղերը բաժանել է թզուկների և հսկաների (1905–07): Առաջինն է հրապարակել «աստղի մեծություն-գույնի ցուցանիշ դիագրամը»՝ Բազումք և Հիադներ աստղակույտերի համար: Տես նաև *Հերցշպրունգ-Ռեսելի դիագրամ*:

ՀԵՐՑՇՊՐՈՒՆԳ–ՌԵՍԵԼԻ ԴԻԱԳՐԱՄ, արտահայտում է աստղերի լուսատվությունների և ջերմաստիճանների միջև (*սպեկտրային դասերով* կամ գույնի ջերմաստիճաններով) կապը: Անվանվել է այդ կապը բացահայտող Է. *Հերցշպրունգի* և մանրամասն ուսումնասիրող Հ. *Ռեսելի* անունով:

ՀԵՐՑՈԳ (Herzog) Խաիմ (1918–1997), Իսրայելի նախագահ՝ 1983–93–ին: 1975–78–ին՝ ՄԱԿ–ում Իսրայելի պատվիրակության ղեկ.:

ՀԵՐՑՈԳ (Hertzog) Զեյմս (1866–1942), Հվ-աֆրիկ. Միության վարչապետ՝ 1924–39–ին: 1939–ին ընդդիմացել է Գերմանիայի դեմ պատերազմին:

ՀԵՐՑՈԳ (Herzog) Ռոման (ծ. 1934), ԳԴՀ նախագահ՝ 1994–99–ին: ՔԴՄ կուս-յան առաջնորդներից: 1987–94–ին՝ Դաշն. դատարանի նախագահ:

ՀԵՐՑՈԳ (Ստիպետիչ, Stipetić) Վեռներ (ծ. 1942), գերմանացի կինոռեժ., սցենարիստ, դերասան: «Ագիռեն՝ Աստծու զայրույթը» (1972), «Ստրոշեկ» (1977), «Նոսֆերատու՝ գիշերվա ուրվականը» (1978), «Վոյցեկ» (1979), «Ֆիցկառալդո» (1982), «Այնտեղ, որտեղ երազում են կանաչ մրջյունները» (1984), «Քարի ճիչը» (1991), «Որդի՛ս, որդի՛ս, ինչ արեցիր դու» (2009) և այլ ֆիլմեր աչքի են ընկնում հարուստ երևակայությամբ, ոճերի արտահայտչականությամբ, փիլ. խնդիրների առավել կարևորությամբ:

ՀԵՐՑՈԳ, հինգերմ. ցեղերի ռազմ. առաջնորդը: Խոշոր ավատատեր միջնադար. Հս. Եվրոպայում: Պալատ. բարձր տիտղոս միջնադարի վերջերից:

ՀԵՐՈՒ (Héroult) Պոլ Լուի Տուսեն (1863–1914), ֆրանսիացի մետաղագետ: Աշակել է կրիոլիտակավահող. հալույթից էլեկտրոլիզով ալյումինի ստացման ժամանակակից արդ. եղանակը (1886): 1899–1900–ին ստեղծել է պողպատի հալման ուղղակի գործողության աղեղ. էլ. վառարանը:

ՀԵՐՈՒՆԻ Պարիս Միսակի (1933–2008), ռադիոֆիզիկոս: Տեխ. գիտ. դ-ր (1972), պրոֆ. (1983): ՀՀ ԳԱԱ (1996, թղթ. անդամ՝ 1982–ից), ՀՃԱ (1999) ակադ.: ՌԴ գիտ. վաստ. գործիչ (2003): Սուրեն *Հերունու* հայրը: ՀՀ ռադիոֆիզ. չափումների ԳՀԻ հիմնադիր-տնօրեն (1971–2008): Անտենաների չափագիտ-յան գիտ. ուղղության հիմնադիրն է: Հ-ու գլխավորությամբ կառուցվել է նոր տեսակի հսկա և եզակի ռադիոօպտիկ. ՌՕԴ 54/2,6 աստղադիտակը (1975–88, ՀՀ Արագածոտնի մարզի Օրգով գ-ի մոտ): Անշարժ գնդային գլխ. ռադիոհայելիով երկհայելի անտենայի համակարգերը հայտնի են «Հերունու հայելային դիտակ» անվանումով: Առաջադրել է վարկած, ըստ որի՝ Սիսիանի Զորաց քարերի համալիրը եղել է հեթանոս. տաճար. ավելի քան 7500 տարեկան է և ծառայել է որպես աստղադիտարան: Այն անվանել է Քարահունջ (անգլ. Սթոունհենջի նմանությամբ):

ԽՍՀՄ (1986), ՀՀ (1985) Պետ., Անտենաների և ալիքների տարածման միջազգ. հանձնաժողովի (1989), IEE-URSI (1991) մրց-ներ, ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (1983) շքանշան: Էկոլոգիայի միջազգ. ակադ-ի Մ. Վ. Լոմոնոսովի անվ. (2002), ՀՀ ԳԱԱ և ԿԳՆ ոսկե (2003) մեդալներ:

ՀԵՐՈՒՆԻ Սուրեն Պարիսի (1955–2007), ռադիոտեխնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (2003): Պարիս *Հերունու* որդին: Աշխ-ները վերաբերում են անտենաչափումներին, արևային էներգետիկային, կապի ցանցերին: Աշակել է ԳԲՀ-ային հայելային անտեններ՝ ուղղվածության դիագրամի կողմնորոշման փոփոխությամբ:

ՀԵՓԲՅՈՒՌՆ (Hepburn) Քեթրին (1907–2003), ամերիկացի դերասանուհի: Խաղացել է թատրոնում, կինոյում ստեղծել է ինքնավստահ և եռանդուն կանանց կերպարներ («Փոքրիկ կանայք», «Մարի Շոտլանդացի», «Գուշակիր, ով է գալու ճաշին», «Աֆրիկայի թագուհին», «Առյուծը՝ ձմռանը», «Ոսկե լճի մոտ» ևն): «Oսկար» (1967, 1968, 1981) մրց.:

ՀԵՓԲՅՈՒՌՆ (Հեփբյոռն-Ռաստոն, Hepburn-Ruston) Օդրի (1929–1993), ամերիկացի կինոդերասանուհի: Ճանաչվել է Հոլիվուդի խոշորագույն դերասան: Կինոյում ստեղծել է համայիշ, միամիտ աղջիկների կատակերգ. («Հռոմեական արձակուրդներ», «Ինչպես գողանալ միլիոն», «Զվարճալի սիրունիկը», «Իմ չքնաղ լեդի»), նաև դրամատիկ. («Պատերազմ և խաղաղություն», «Մանկական ժամ», «Ռոբին և Մերիան») կերպարներ: «Oսկար» մրց. (1954, 1993):

ՀԵՓԵՍՏՈՍ, կրակի, դարբնության աստվածը հուն. դից-յան մեջ: *Զևսի* և *Հերայի* որդին: Արվ-ում Հ. պատկերվել է կարճահասակ, կաղ, գործավորի հագուստով, մետաղագործի մուրճը և ունելին՝ ձեռքին: Հ-ն է շարունակաբար հարվածելով ամրացրել *Պրոմեթևսի* շղթաները: Հին Հայաստանում Հ. նույնացվել է *Միհրին*:

ՀԵՓԹԱՂՆԵՐ, **հփթաղներ**, սպիտակ հոններ, ցեղ. միավորում (V–VI դդ.): Հինհայկ. աղբյուրներում հիշատակվում են նաև «քուշաններ» անունով: Հիմնականում արևելահրան. ցեղեր էին և, հնարավոր է, ներառել են այլ էթնիկ տարրեր, հատկապես՝ հոների և մազքութների ցեղախմբեր: 484–ին Հ. կործանիչ հարված են հասցրել Պարսից արքայից արքա Պերոզի զորքերին:

ՀԵՔԵԼԵԿՅԱՆ Հովհաննես Նազարի (1899–1989), մանրէաբան, կենսաքիմիկոս: Մանրէաբան. գիտ. դ-ր (1925): 1957–67–ին՝ Նյու Ջերսիի (ԱՄՆ) համալսարանի ամբիոնի վարիչ: Աշխ-ները վերաբերում են հոսող կեղտաջրերի ախտազերծման և մաքրման կենսբ. եղանակների մշակման հարցերին: Ամերիկ. բակտերիաբանների և Քիմ. ընկ-ների անդամ:

ՀԵՔԵՔՅԱՆ (Աբրահամյան) Էլմիրա Աբրահամի (ծ. 1928), ռեժ.: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1986): Տիգրան *Հեքեքյանի* մայրը: 1946–58–ին (ընդհատումներով) աշխատել է Բաքվի հայկ., Երևանի ռուս. թատրոններում, 1958–ից՝ ՀՀ հեռուստաստուդիայի ռեժ. (Արիստոֆանեսի «Ամպեր», Ջ. Բրունոյի «Մոմակալը», ևն): Նկարահանել է «Մինչև 16 տարեկանները» թույլատրվում է» (1964) ֆիլմը: «Հայաստանի փոքրիկ երգիչների» միջազգ. ընկերակցության փոխնախագահ (1992–ից):

ՀԵՔԵՔՅԱՆ Տիգրան Արտյոմի (ծ. 1959), խմբավար: ՀՀ վաստ. մանկավարժ (2010): Էլմիրա *Հեքեքյանի* որդին: ԵՊՊ պրոֆ. (1999–ից): 1984–2002–ին՝ Հեռուստառադիոյի կամեր. երգչախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր, «Հայաստանի փոքրիկ երգիչներ» միջազգ. ընկերակցության հիմնադիր-նախագահ (1992, համանուն մանկ. երգչախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր): Երգչախմբ. արվ-ի 1-ին՝ «Աշտարակ–93» միջազգ. փառատոնի (1993) կազմակերպիչ:

Երգչախմբերի միջազգ. մրցույթների [1991, Առնհեմ (Նիդեռլանդներ), 3–րդ մրց., 1992, Տակարացկա (Ճապոնիա), ոսկե մեդալ և Գլխ. մրց., 1995, Սան Ֆրանցիսկո (ԱՄՆ), ոսկե մեդալ դափնեկիր, ՀՀ «Սովսես Խորենացի»(1996) մեդալ:

ՀԵՔԻԱԹ, ժող. բանահյուսության հիմն. ժանրերից, հիմնականում՝ արձակ, բանավոր գործ՝ հյուսված գեղ. հնարանքի յուրատեսակ միջոցներով: Տարբերում են Հ-ների հրաշապատում (կախարդ.), իրապատում (կենցաղ.), կենդան. և այլ տեսակներ: Հայտնի հեքիաթագիրներ են Գրիմ եղբայրները («Հենզելն ու Գրետելը» ևն), Շառլ Պեռոն («Մոխրոտիկը» ևն), Ա. Ս. Պուշկինը («Ոսկե ձկնիկը» ևն), Հ. Ք. Անդերսենը («Ձրահաբսը» ևն), Հ. Թումանյանը («Կոնատ աղջիկը» ևն), Ղ. Աղայանը («Անահիտ» ևն) և ուր.:

ՀԵՔԻՄԲԱՉՅԱՆ Ալիս Արամի (ծ. 1943), երգչուհի (սոպրանո)։ Հայրենադարձել է 1947-ին։ 1974-ից՝ ԵՕՔԹ-ի մեներգչուհի (Անուշ՝ Ա. Տիգրանյանի «Անուշ», Օլիմպիա՝ Տ. Չուխաճյանի «Արշակ Բ», Մարո՝ Զ. Փալիաշվիլու «Դահիճ», ևն), 1992-ից՝ նաև ռեժ.։ Համերգ. երկացանկում՝ Կոմիտասի, Տ. Մանսուրյանի, Է. Միրզոյանի, Ա. Հարությունյանի, Վ. Բաբայանի և ուր. գործերից։ Հանրապետ., միութ. մրցույթների և փառատոների (1963, 1969, 1975, Երևան, 1971, Վոլգոգրադ, ևն) դափնեկիր։

ՀԵՔԻՄՅԱՆ Ալեքսեյ Գուրգենի (1927–1982), միլիցիայի գեն.-մայոր, երգերի հեղինակ։ ԽՍՀՄ ՆԳ վաստ. աշխատող (1972)։ Դաղստանի (1973) և ՀԽՍՀ (1981) արվ. վաստ. գործիչ։ Գրել է ժող.-քաղաք. երգեր («Բարի արագիլ», «Երգիր ինձ համար», «Ղարաբաղի եղնիկ», «Իմ Հայաստան», «Ղարաբաղ» ևն, «Ինչո՞ւ», «Ցանկություն», «Ես կգամ» ևն)։

ՀԵՔԻՄՅԱՆ Սրապիոն (1832–1892), դրամատուրգ, մշակույթի գործիչ։ Կ. Պոլսում հիմնադրել է պոլսահայ 1-ին պրոֆեսիոնալ թատրոնը (1850, նաև դերասան)։ Հեղինակ է «Արտաշէս եւ Սաթէնիկ» (1848), «Հարմակ եւ Աշխէն» (1850) և այլ դրամաների, «Սամվել» պատմ. ողբերգության։ Թղթակցել է «Բազմավէպ», «Երկրագունդ», «Ծաղիկ», «Մասիս» և այլ պարբ.-ների։

ՀԵՔԻՄՅԱՆ Վահե (1914–1997), նկարիչ։ 1915-ին ապաստանել է Կ. Պոլսի որբանոցներից մեկում։ 1928-ին տեղափոխվել է Փարիզ, ապա հաստատվել է Գրասում։ Հեղինակ է «Օրդու» (1961), «Նատյուրմորտ» (1969), «Աղանա», «Տրապիզոն», «Հայկական երգ», «Զեյթուն» և այլ գործերի։

ՀԵՔՄԱՆ (Heckman) Ջեյմս (ծ. 1944), ամերիկացի տնտեսագետ։ Աշխ.-ները վերաբերում են աշխ. պաշարներին, ազգաբնակչությանը, «մարդկային կապիտալին», պետ. քաղ.-յանը, միկրոտնտ. տվյալների վիճակագր. վերլուծության մեթոդներին։ Նորելյան մրց. (2000)։

ՀԵՔՄԱՆ Ջին (Յուջին Օլդեն, ծ. 1930), ամերիկացի դերասան։ 1950-ական թթ.-ին հանդես է եկել թատրոնում և հեռուստատեսությունում։ Նկարահանվել է «Բոննին և Քլայդը», «Ֆրանսիացի կապավորը», «Խրտվիլակ», «Զրույց», ««Դոմինոյի» սկզբունքը», «Գերմարդը», «Ծայրահեղ միջոցառումներ», «Կողոպուտ» և այլ ֆիլմերում։ «Օսկար» (1972, 1993) մրց.։

ՀԵՔՍԱ... (հուն.՝ hex – վեց), բարդ բառերում նշանակում է վեց (օր.՝ հեքսագոն-վեցակողմ ևն)։

ՀԵՔՍԱՄԵԹԻԼԵՆՔԱՄԻՆ, **հեքսամին, ուրոտրոպին**, քաղցրահամ, անգույն բյուրեղ. նյութ։ Թորվում է վակուումում՝ 230°C-ից բարձր, 280°C-ում ածխանում է։ Ֆենոլֆորմալդեհիդ. խեժերի պնդացրար է, պայթուցիկ նյութերի (*օկտոգեն, հեքսոգեն*) սինթեզի հումք, պինդ անծուխ վառելանյութ («պինդ սպիրտ»)։ Հականեխիչ դեղանյութ, կոռոզիայի արգելակիչ։

ՀԵՔՍԱՆ, $CH_3(CH_2)_4CH_3$, *n*-հեքսան, անգույն հեղուկ, $t_{եռ.}$՝ 68,74°C։ Պարունակվում է նավթամթերքներում, որոնց քիմ. վերամշակման (օր.՝ ռիֆորմինգի) ժամանակ փոխարկվում է բենզոլի, իզոմերման հետևանքով առաջանում է իզոհեքսան՝ շարժիչների վառելանյութի բարձրօկտան. բաղադրամաս։ Կիրառվում է որպես լուծիչ և հեղուկ՝ ցածրջերմաստիճան. ջերմաչափիներում։

ՀԵՔՍԱՔԼՈՐԱՆ, **հեքսաքլորցիկլոհեքսան**՝ $C_6H_6Cl_6$, ստացվում է բենզոլին քլոր միացնելով։ Անհոտ, դառնահամ, բյուրեղ. և միջատասպան նյութ է։ Գոլ-յան մեջ գործածվում է 99–100 % γ-իզոմեր պարունակող պատրաստուկը («լինդան»)։

ՀԵՔՍԱՔԼՈՐԷԹԱՆ, C_2Cl_6, անգույն բյուրեղ. նյութ, $t_{հալ.}$՝ 187°C։ Թաղանթանյութային նիտրատների արտադր-յան մեջ փոխարինում է ***քափուրին***։ Հրատեխ. բաղադրությունների լուսարձակման ուժեղացուցիչ է, ծխարար (որոշ մետաղների խառնուրդում), հակաճիճվային նյութ՝ կենդանիների համար։

ՀԵՔՍՈԳԵՆ, 1,3,5-եռնիտրա-1,3,5-եռազացիկլոհեքսան, բարձր փշրտողության պայթուցիկ նյութ։ Սպիտակ բյուրեղ. փոշի է։ Պայթյունի ջերմությունը 5,5 *ՄՋ/կգ*։ Կիրառվում է ռազմամթերքներում, ճայթեցնող քուղերում, կուտակային լիցքերի բաղադրություններում ևն։

ՀԵՔՍՈԶՆԵՐ, միաշաքարներ, որոնց մոլեները պարունակում են ածխածնի 6 ատոմ։ Հ. են խաղողաշաքարը (գլյուկոզ), գալակտոզը, պտղաշաքարը (ֆրուկտոզ) ևն։

ՀԵՖԵՅ, Լուչժոու, ք. Չինաստանի արլ.-ում, Անհոյ պրովինցիայի վարչ. կենտրոնը։ Բն.՝ 3,3 մլն (2010)։

ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ, 1. ֆիզ. մեծություն. հավասար է աշխ-ի և նրա կատարման ժամանակամիջոցի հարաբերությանը։ Հավասարաչափ աշխ-ի համար հզորությունը՝ $W = A/t$ (A-ն t ժամանակահատվածում կատարված աշխ-ն է)։ Չափվում է *Վտ*-երով՝ 1*Վտ* = *Ջ/վ*։ 2. (Մաթ.) **բազմության**, բազմությունների տեսության հասկացություն. բնութագրում է այն ընդհանուր, որը հատուկ է տվյալ բազմությանը համարժեք բոլոր բազմություններին, ընդ որում՝ 2 բազմություններ կոչվում են համարժեք, եթե նրանց միջև գոյություն ունի փոխմիարժեք համապատասխանություն։ Ամենափոքր անվերջ Հ. ունեն բնական թվերի բազմությունը և նրան համարժեք բոլոր, այսպես կոչված, հաշվելի բազմությունները։

ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՁԱՅՆԻ, միավոր ժամանակում դիտարկվող մակերևույթով ձայն. ալիքի տեղափոխած էներգիան։ Ձայնի տարածմանն ուղղահայաց մակերևույթի միավոր մակերեսով տեղափոխված Հ. ձ-ի միջին արժեքն անվանում են ***ձայնի ինտենսիվություն***։

ՀԸՋԲՈԼԼԱՀ (արաբ. – Ալլահի կուս-յուն), ռազմ. կազմ-յուն և արմատ. շիա մահմեդ. քաղ. կուս-յուն, Լիբանանը մահմեդ. պետության վերածելու ջատագով։ Հիմնադրվել է 1982-ին Բեյրութում։ ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Իսրայելում, Եգիպտոսում և մի շարք այլ երկրներում համարվում է ահաբեկչ. կազմ-յուն։

ՀԻԱԼՈՒՐՈՆԱԹՈՒՆ, բազմաշաքար, մտնում է ողնաշարավոր կենդանիների շարակց. հյուսվածքի արտաբջջ. հիմն. նյութի բաղադրության մեջ, պարունակվում է աչքի ապակենման մարմնիկում, հոդային հեղուկում ևն։

ՀԻԲՐԻԴ (լատ.՝ hibrida – խառնածին), գենետիկորեն տարբերվող ծնող. 2 ձևերի (տեսակներ, ցեղեր, գծեր) խաչասերումից (տրամախաչումից) ստացված սեռ. սերունդ։

ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՍԵՐՄԵՐ, ստացվում են բույսերի տարբեր սորտերի, գծերի, տեսակների և ցեղերի խաչասերումից։ 1-ին սերնդի առանձնյակներն ավելի են հարմարվում աճման պայմաններին և բարձր բերքատու են (տես *Հետերոզիս*)։

ՀԻԲՐԻԴՈՄԱ (< *հիբրիդ* և հուն.՝ oma – ուռուցք), **բջջային հիբրիդ**. ստացվում է՝ բնականոն բջջի (օր.՝ իմուն. լիմֆոցիտի) ուռուցքայինի հետ միաձուլելով։ Օժտված է առանձնահատուկ սպիտակուցի (օր.՝ հակամարմնի) սինթեզման (բնականոն բջջի հատկություն) և անսահմանափակ աճի (ուռուցք. բջջի հատկություն) ունակությամբ։ Սինթեզված մոնոկլոնային հակամարմին Հ-ներն օգտագործում են կենսբան և բժշկության տարբեր ոլորտներում։

ՀԻԳԻԵՅԱ, (Hygieia), առողջության աստվածուհին հուն. դից-յան մեջ։ Ասկլեպիոսի դուստրը։ Պատկերվել է երիտասարդ կնոջ կերպարանքով, օձի հետ, որին նա կերակրում է գավաթից (գավաթը օձի հետ դարձել է առողջապ-յան խորհրդանիշը)։ Հ-ից է առաջացել «հիգիենա» բառը։

ՀԻԳԻԵՆԱ, (հուն.՝ hygienos – առողջ), 1. բժշկագիտ-յան բաժին. ուսումնասիրում է կյանքի և աշխ-ի պայմանների ազդեցությունը մարդու առողջության, աշխատունակության ու կյանքի տևողության վրա, մշակում հիվանդությունների կանխարգելման միջոցառումներ, երկարակեցության բարենպաստ պայմաններ։ Բժշկ. գիտելիքների առավել հնագույն ճյուղերից է։ Կոչվել է հուն. առողջապահության աստվածուհի *Հիգեյայի* անունով։ Ընդգրկում է մի շարք ինքնուրույն՝ կոմունալ Հ., աշխ-ի Հ., երեխաների և դեռահասների Հ., սննդի Հ., ռազմ. Հ., ճառագայթ. Հ. և այլ բաժիններ։ 2. **Հ. աշխատանքի**, հիգիենայի բաժին. ուսումնասիրում է մարդու օրգանիզմի վրա աշխ. գործունեության և արտադր. միջավայրի հնարավոր ազդեցությունը, մշակում միջավայրի առողջացման միջոցառումներ ու հիգիենային նորմեր։ 3. **Հ. կոմունալ**, հիգիենայի բաժին. ուսումնասիրում է բնակավայրերի բնական ու սոցիալ. գործոնների ազդեցությունն օրգանիզմի վրա, մշակում հիգիենային նորմեր և բնակության բարենպաստ պայմանների ստեղծման սան. միջոցառումներ։ 4. **Հ. սննդի**, հիգիենայի բաժին. ուսումնասիրում է տարբեր սննդանյութեր պարունակող սննդի օրաբաժնի ազդեցությունն օրգանիզմի վրա, նրանց և օպտիմալ հարաբերակցության հանդեպ օրգանիզմի պահանջը՝ կախված աշխ-ի ու կենցաղի պայմաններից, մշակում սննդ. (ալիմենտար) հիվանդությունների կանխարգելման միջոցառումներ։ Տես նաև *Սոցիալական հիգիենա*։

ՀԻԴԱ, լ-շղթա Շապոնիայի Հոնսյու կղզում։ Երկ.՝ 140 *կմ*, բարձր.՝ մինչև 3190 *մ*։ Կան հրաբուխներ (այդ թվում՝ գործող)։ Ծածկված է ասեղնատերև և խառն անտառներով։

ՀԻԴԱԼԳՕ (Hidalgo y Costilla) Միգել (1753–1811), Մեքսիկայի Ազգ. հերոս, 1810–11-ի ժող. ապստամբության (հետագայում վերածվել է Իսպանիայից անկախացման պատերազմի) ղեկ.։ 1810-ի նոյեմբ.-ին ստեղծել է հեղ. կառ-յուն։ Գերեվարել են և գնդակահարել։

ՀԻԴԱԼԳՕ (Hidalgo), նահանգ Մեքսիկայի կենտր. մասում։ Տարածքը՝ 21 հզ. *կմ*², բն.՝ 2,75 մլն (2012)։ Վարչ. կենտրոնը՝ *Պաչուկա*։

ՀԻԴԱԼԳՕ (իսպ.՝ hidalgo), մանր և միջին ազնվականության ներկայացուցիչ միջնադար. Իսպանիայում։ Տերմինն առաջա-

ցել է XII դ–ում, իսկ XIII–XIV դդ–ից ցույց է տվել պատկանելություն ասպետների դասին: XVI–XVII դդ–ում Հ–ի հավաք. կերպար է Դոն Քիշոտը:

ՀԻԴԱԾ (Hidas) Անթալ (Հյուլա Սանտո, Szántó,1899–1980), հունգար գրող: 1925–1959–ին՝ ԽՍՀՄ–ում: Հեղինակ է հեղ. երգերի, հայրենասիր. բանաստեղծությունների, Բուդապեշտի արհեստավորների և աշխատավորների մասին «Պարոն Ֆիցեկը» (1936), «Մարտոնը և իր ընկերները» (1959), «Ուրիշ երաժշտություն է պետք» (1963) վեպերի, «Ժամանակին եմ ասում» (1979) հուշագրության ևն: 1938–44–ին անհիմն բռնադատվել է:

ՀԻԴՐԱ (Hidra), **Լեռնեյան հիդրա**, բազմագլուխ ջր. օձ հուն. դից–յան մեջ: Հարյուրգլխանի հրեշ ***Տիփոնի*** և կես–կին կես–օձ ***Եքիդնայի*** դուստրը: Բնակվել է Պելոպոնեսի Լեռնեի ճահճուտում, բնաջնջել նախիրներ և հոտեր, ամայացրել շրջապատը: Համարվել է անպարտելի, քանի որ Հ–ի 9 գլուխներից մեկը եղել է անմահ, իսկ մյուսները կտրելուց հետո վերականգնվել են: Սպանել է ***Հերակլեսը***:

ՀԻԴՐԱ (Hydra), համաստեղություն երկնքի Հվ. կիսագնդում՝ Կենտավրոս, Պոմպ, Կողմնացույց, Նավախել, Միաեղջյուր, Փոքր Շուն, Խեցգետին, Առյուծ, Սեքստան, Թաս, Ագռավ, Կույս, Կշեռք համաստեղությունների միջև: Ամենապայծառ աստղը՝ Ալֆարդը (α Հիդրայի), 2–րդ աստղային մեծության է: Հս. միջին լայն–ներից մասամբ երևում է ձմռանն ու գարնանը:

ՀԻԴՐԱ, աղեխորշավորների տիպի հիդրոզոաների (հիդրոիդներ) դասի անողնաշար կենդանի: Մարմինը գլանաձև է, երկ.՝ 1–1,5 *սմ*: Ապրում է քաղցրահամ ջրերում: Մարմնի մի ծայրով՝ ներբանով, կպչում է հիմնանյութին, իսկ ազատ ծայրում խայթիչ բջիջներով շրջապատված բերանն է: Գիշատիչ է, սնվում է մեծ մասամբ խեցգետնակերպներով, որդերով, շերեփուկներով: Օժտված են վերականգնման ունակությամբ:

ՀԻԴՐԱԶԻՆ, երկամիդ՝ $H_2N–NH_2$, անգույն, խոնավածուծ, օդում ծխացող, ջրում անսահմանափակ լուծվող հեղուկ է, պայթունավտանգ է և թունավոր: Օգտագործում են պլաստմասսաների, կաուչուկների, միջատասպանների, ծակոտազոյացիչների արտադր–յան մեջ: Հ–ի ածանցյալները հրթիռ. վառելանյութի բաղադրիչ են:

ՀԻԴՐԱԶՈՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, օրգ. միացություններ, որոնք պարունակում են ածխաջրածնային 2 ռադիկալների հետ կապված հիդրազոխումբ՝ –NH–NH– (օր.՝ հիդրազոբենզոլը՝ $C_6H_5–NH–NH–C_6H_5$):

ՀԻԴՐԱՎԼԻԿԱ [< հուն. hydōr (hydratos) – ջուր և aulos – խողովակ], գիտ–յուն հեղուկների շարժման ու հավասարակշռության օրենքների և դրանք ճարտարագիտ. խնդիրների լուծումներում կիրառելու եղանակների մասին: Հ. շատ դեպքերում սահմանափակվում է հեղուկների միաչափ շարժման քննարկմամբ՝ դրանք ընդունելով, սովորաբար, անսեղմելի:

ՀԻԴՐԱՎԼԻԿԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ, խողովակաշարով հեղուկի կամ գազի շարժման ժամանակ դրանց մածուցիկությամբ պայմանավորված դիմադրությունը, որն առաջացնում է հոսքի էներգիայի կորուստ: Տես նաև ***Հիդրոդինամիկական դիմադրություն***:

ՀԻԴՐԱՎԼԻԿԱԿԱՆ ԹՈՒՐԲԱ, բաց հունում ջրի մակարդակի կտրուկ, թռիչքային բարձրացման երևույթը, երբ հոսքը բուռն վիճակից անցնում է հանգիստ վիճակի: Հ. թ–ի գոտում մակարդակի զգալի բարձրացումն ուղեկցվում է մակերևութ. «գրտնակի» առաջացմամբ, որտեղ օդով խիստ հագեցած հեղուկը կատարում է բարդ պտտ. շարժում: Հ. թ. սովորաբար տեղի է ունենում հոսքը հիդրոտեխ. կառուցվածքով (***ջրթափ***, ***ջրթող*** ևն) բաց թողնելու դեպքում:

ՀԻԴՐԱՎԼԻԿԱԿԱՆ ՀԱՐՎԱԾ, հեղուկում ճնշման կտրուկ բարձրացում՝ պոմպերում կամ ճնշում. խողովակաշարերում՝ հոսքի արագության հանկարծակի փոփոխման (օր.՝ խողովակաշարի արագ պատնեշման) դեպքում: Հ. հ. կարող է վթարի պատճառ դառնալ, ուստի խողովակաշարում տեղադրում են ապահովիչ սարքեր (հավասարիչ տարողություն, օդ. թասակներ, փականներ): Հ. հ–ի տեսությունն ստեղծել է Ն. Ե. ***Ժուկովսկին***:

ՀԻԴՐԱՎԼԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐ, մեքենաներում և մեխանիզմներում ճիգերը փոխանցելու համար օգտագործվող հեղուկներ: Կայուն են օքսիդացման, իներտ՝ հիդրոհամակարգի մեքենամասերի նկատմամբ, ունեն պնդացման ցածր և բռնկման բարձր ջերմաստիճաններ. դրանցից են, օր. արդ. յուղերը, ֆտորածխածինները ևն:

ՀԻԴՐԱՎԼԻԿԱԿԱՆ ՇԱՐԺԻՉ, հիդրոշարժիչ, հեղուկի մեխ. էներգիան պտտվող լիսեռի, հետադարձ–համընթաց շարժվող մխոցի և այլ մեքենամասերի մեխ. աշխ–ի փոխարկման մեքենա:

ՀԻԴՐԱՎԼԻԿԱԿԱՆ ՏՈՒՐԲԻՆ, հիդրոտուրբին, ջրի հոսքի մեխ. էներգիան լիսեռի պտտման էներգիայի փոխարկող թիավոր ***հիդրավլիկական շարժիչ***: Օգտագործվում է հիմնականում ջրէկներում էլ. գեներատորների շարժ ա ռերման համար:

ՀԻԴՐԱՎԼԻԿԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ, հիդրոփոխանցում, հիդրավլիկ. մեխանիզմների համախումբ, որն աշխ. հեղուկի միջոցով մեխ. էներգիան (պտտող մոմենտ, ճիգ) տանող տարրից փոխանցում է տարվողին: Ըստ աշխ–ի սկզբունքի՝ տարբերում են հիդրոդինամիկ և հիդրոստատիկ (ծավալ.) փոխանցումներ: Օգտագործում են ջերմանավերում, ջերմաքարշներում, ավտոմեքենաներում, ինքնաթիռներում, հաստոցներում: Տես նաև ***Հիդրոդինամիկական փոխանցիչ:***

ՀԻԴՐԱՏՄԱՆՈՒՄ, ջրավորում, քիմ. նյութերին ջրի միացման գործողություն: Կարող է ընթանալ ջրի մոլ–ի քայքայմամբ (օր.՝ էթիլենի Հ–մամբ էթանոլի սինթեզը) կամ առանց դրա (օր.՝ բյուրեղահիդրատների առաջացումը): Պայմանավորում է նյութի լուծելիությունը ջրում, իոն. կապով միացությունների էլեկտրոլիտիկ դիսոցումը ևն:

ՀԻԴՐԱՏՆԵՐ, մոլ–ներին, իոններին կամ ատոմներին ջրի մոլ–ների միացման (հիդրատացման) արգասիքները: Իոն. միացությունների պինդ Հ., օր.՝ $CaSO_4·2H_2O$–ն, բյուրեղահիդրատներ են, ատոմների (Ar, Xe) Հ.՝ գազահիդրատներ:

ՀԻԴՐԻԴՆԵՐ, քիմ. տարրերի ջրածնային միացություններ, որոնցում ջրածինն ունի բացաս. օքսիդացման աստիճան: Վերականգնիչներ են: Ըստ քիմ. կապի բնույթի՝ տարբերում են իոն., մետաղ. և կովալենտ Հ.: Որոշ Հ. միջանկյալ արգասիքներ են հատուկ մաքրության տարրեր (սիլիցիում, գերմանիում) ստանալու ժամանակ: Տես ***Այյումահիդրիդներ, Բորահիդրիդներ մետաղների:***

ՀԻԴՐՈ... (հուն.՝ hydōr – ջուր), բարդ բառերի մաս. նշանակում է՝ 1. ջրին վերաբերող, ջր. (օր.՝ հիդրոդինամիկա), 2. ջուրը և նրա էներգիան օգտագործող (օր.՝ հիդրոէլստրուզիա, հիդրոցիկլոն), 3. ջրածնին վերաբերող (օր.՝ ***հիդրոկրեկինգ***):

ՀԻԴՐՈԲԻՈՆՏՆԵՐ (< ***հիդրո*** և հուն.՝ bion, սեռ. հոլ.՝ biontos – ապրող), **ջրաբնակ**, ծով. և ցամաք. ջրավազաններում ապրող բույսեր, կենդանիներ և միկրոօրգանիզմներ:

ՀԻԴՐՈԳԵՆԱՑՈՒՄ, ջրածնավորում, նույնն է, ինչ ***հիդրումը***:

ՀԻԴՐՈԳԵՆԵՐԱՏՈՐ, ***հիդրավլիկական տուրբինով*** պտտման մեջ դրվող էլ. հոսանքի ***համաժամ գեներատոր***: Հ–ի ռոտորն ամրակցված է տուրբինի աշխ. անվի լիսեռին (սովորաբար՝ ուղղաձիգ): Հ–ի հզորությունը մինչև 700 և ավելի *ՄՎտ* է:

ՀԻԴՐՈԴԻՆԱՄԻԿԱ, ***հիդրոմեխանիկայի*** բաժին. ուսումնասիրում է անսեղմելի հեղուկների շարժումը և նրանց փոխազդեցությունը պինդ մարմինների հետ: Հ–ի տես. մեթոդները հիմնված են շարժվող հեղուկում կամ գազում ֆիզ. երևույթները նկարագրող ճշգրիտ կամ մոտավոր հավասարումները լուծելու վրա: Փորձարար. Հ–ի խնդիրները հետազոտվում են հեղուկով կամ գազով շրջահոսվող մոդելների միջոցով՝ պահպանելով ***նմանության տեսության*** պայմանները: Հ–ում ստացված արդյունքներն օգտագործում են նավերի, ինքնաթիռների, հրթիռների նախագծման աշխ–ներում:

ՀԻԴՐՈԴԻՆԱՄԻԿԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ, հիդրավլիկական դիմադրություն, հեղուկում կամ անսեղմելի գազում շարժվող մարմնին, նաև խողովակաշարում ջրի կամ գազի հոսքին դիմադրող ուժ:

ՀԻԴՐՈԶՈԱՆԵՐ, հիդրոհիդներ, աղեխորշավորների տիպի ջր. անողնաշար կենդանիների դաս: Հայտնի է 5–6 կարգ (այդ թվում՝ ***հիդրաները***), մոտ 400 տեսակ, որոնց բնորոշ է սեռ. (մեդուզաներ) և անսեռ (պոլիպներ) սերունդների հաջորդափոխությունը:

ՀԻԴՐՈԷԼԵՎԱՏՈՐ, հեղուկների ու հիդրոխառնուրդների բարձրացման ու խողովակաշարով մինչև մի քանի հարյուր մետր տեղափոխման ***շիթային սրսկ:***

ՀԻԴՐՈԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ՁԿՆԱԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀՀ ԳԱԱ, կազմավորվել է 1991–ին՝ Սևանի ջրակենսբ. կայանի (1936) հիման վրա (1923–36–ին՝ Սևանի ձկնաբուծ. կայան): 2006–ից՝ ՀՀ ԳԱԱ ***Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի Գիտական կենտրոնի*** կազմում: Հիմն. խնդիրները Սևանա լճի ջրաէկոլոգ., ջրաֆիզ., ջրաքիմ., ջրակենսբ.՝ ներառյալ միկրոօրգանիզմների, ջր. բույսերի, նախակենդանիների, անողնաշարների, ձկների զարգացման օրինաչափությունները են, լճի բնական պաշարների պահպանումն ու օգտագործումը, լճի վրա ջրհավաք ավազանի ազդեցության գնահատումը և լճային համակարգի մեջ բաղադրիչների մաթ. մոդելավորումը: Ինստ–ում մշակել են և հիմնավորել Սևանա լճի էվտրոֆացումը (օրգ. նյութի ավելացումը ջր. ավազանում և ջրի «ծաղկումը») կանխող միջոցառումները: Ինստ–ի նախաձեռնությամբ ընդունվել է «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը: ՀՀ բարձրադիր ջրամբարներում (Արփի լիճ, Ապարանի, Մանթաշի) գիտականորեն հիմնավորվել է ձկների կլիմայավարժեցման հարցը:

Տևօրեններ՝ Մ. Ֆորտունատով, Ս. Բենինգ, Ս. Մարկոսյան, Ռաֆայել Հովհաննիսյան, Բարդուխ Գաբրիելյան, Էվելինա Ղուկասյան (2011–ից):

ՀԻԴՐՈԷՔՍՏՐՈՒԶԻՈՆ (< *հիդրո...* և լատ.՝ extrusio – արտամղում), **հիդրոստատիկ մամլում**, մետաղների մշակում ճնշմամբ, երբ փակ կոնտեյներում տեղակայված պատրաստուկը բարձր ճնշման (0,3–3 *ԳՊա*) հեղուկի ազդեցությամբ արտամղվում է մատրիցայի խուղակով: Օգտագործվում է մետաղագործ. կիսաֆաբրիկատներ (դժվար ձևախախտվող և դժվարահալ մետաղաձողեր, մետաղալարեր, տրամատներ) կամ մեքենամասերի պատրաստուկներ (գայլիկոններ, ներպատրուակիչներ ևն) ստանալու նպատակով:

ՀԻԴՐՈՒՆԴՔՆԱԹԻՈՒ, **հիդրոպլան**, ջրի մակերևույթի վրա վերելք–վայրէջք կատարող, նաև մանևրող ինքնաթիռ: Տարբերում են՝ ***ծովակային,*** լողանային (1 կամ 2 լողանով) և ***ամֆիբիա*** Հ–ներ:

ՀԻԴՐՈԼԱԶՆԵՐ, ֆերմենտների դաս. կատալիզում են հիդրոլիզը, այսինքն՝ օրգ. միացությունների ճեղքումը ջրի մասնակցությամբ: Հ. են բազմաթիվ մարսող. ֆերմենտներ: Մի շարք Հ. օգտագործում են սննդի արդ–յան մեջ:

ՀԻԴՐՈԼԻԶ (< *հիդրո...* և հուն.՝ lisis – քայքայում), **ջրատարրալուծում**, իոնափոխանակ. ռեակցիա ջրի և տարբեր նյութերի միջև. օր.՝ $AlCl_3 + 3H_2O \rightleftarrows Al(OH)_3 + 3HCl$: Մի շարք բնական և տեխնոլոգ. շարժընթացների հիմքն է:

ՀԻԴՐՈԼԻԶ ԲՈՒՍԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ, ջրի փոխազդեցությունը ոչ սննդ. բուս. բազմաշաքարների (բնափայտի թափոնների, բամբակենու թեփի, արևածաղկի ևն) հետ՝ կատալիզորդների (անօրգ. թթուների) առկայությամբ: Ելային բուս. հումքը սովորաբար պարունակում է մինչև 75% ջրում անլուծելի բազմաշաքարներ՝ թաղանթանյութի և կիսաթաղանթանյութի ձևերով, որոնց քայքայման ժամանակ սկզբում առաջանում են միջանկյալ միացություններ, ապա՝ պարզագույն շաքարներ՝ **մոնոզներ:** Միաժամանակ տեղի է ունենում նաև վերջիններիս քայքայում, և ստացվում են ֆուրֆուրոլ, օրգ. թթուներ, հեմիննաթթուներ և այլ նյութեր:

ՀԻԴՐՈԿՈՐՏԻԶՈՆ, **կորտիզոլ**, մարդու և կենդանիների մակերիկամների կեղևում արտադրվող հորմոն (կորտիկոստերոիդ): Մասնակցում է օրգանիզմում ածխաջր., սպիտակուց. և ճարպ. փոխանակությանը, խթանում սպիտակուցների քայքայումը և ածխաջրերի սինթեզը:

ՀԻԴՐՈԿՐԵԿԻՆԳ, բարձր ջերմաստիճաններում եռացող նավթի ֆրակցիաների, մազութի, գուդրոնի մշակումը ջրածնով՝ 330–450^0 ջերմաստիճաններում և 5–30 *ՄՊա* ճնշումների պայմաններում՝ կատալիզորդների առկայությամբ: Օգտագործում են բենզին, դիզել. վառելիք, քսայուղեր ևն ստանալու համար:

ՀԻԴՐՈՀԱՆԳՈՒՅՑ, հիդրոտեխնիկական կառույցների հանգույց, ընդհ. տեղաբաշխմամբ և համատեղ աշխ–ի պայմաններով միավորված հիդրոտեխ. կառույցների խումբ: Լինում են էներգետիկ, ջրափոխադրիչ, ջրառու ևն: Հ–ները հաճախ համալիր են և միաժամանակ կատարում են ջրատնտ. մի քանի գործառույթներ:

ՀԻԴՐՈՁԱՅՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ձայնագիտ–յան բաժին. ստորջրյա ***տեղորոշման*** և կապի նպատակներով ուսումնասիրում է ձայն. ալիքների տարածումն իրական ջր. միջավայրում: Ջրում ձայնն ավելի ուշ է մարում, քան օդում, այդ պատճառով ստորջրյա ձայնը տարածվում է ավելի մեծ հեռ–յուններ:

ՀԻԴՐՈՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԻՆԱՄՈ (ֆիզ.), հաղորդիչ միջավայրերի (պլազմաներ, հեղուկներ) հիդրոդինամիկ. շարժման միջոցով մագնիս. դաշտերի ուժեղացումը կամ հաստատուն վիճակի պահպանումը: Հ. դ–ի մեխանիզմը նման է ինքնագրգռման դինամո–մեքենաներում էլ. հոսանքի և մագնիս. դաշտի առաջացմանը: Աստղերի և որոշ մոլորակների (այդ թվում՝ *Երկրի*) ընդերքում Հ. դ–ի իրականացմամբ է բացատրվում նրանց սեփ. մագնիս. դաշտերի գոյությունը:

ՀԻԴՐՈՄԵԽԱՆԻԿԱ, ***մեխանիկայի*** բաժին. ուսումնասիրում է հեղուկների շարժումը (***հիդրոդինամիկա***) և հավասարակշռությունը (***հիդրոստատիկա***), նաև հեղուկների և նրանց մեջ ընկղմված կամ շարժվող պինդ մարմինների փոխազդեցությունները:

ՀԻԴՐՈՄԵԿՈՒՄԱՅՈՒՄ, 1. շին. կառուցվածքների, շինությունների, շենքերի ևնի պաշտպան–յունը ջրի և այլ հեղուկների ազդեցությունից, թափանցումից: Տես նաև ***Մեկուսացում, Ջերմամեկուսացում***: 2. Հիդրոմեկուսիչ նյութեր:

ՀԻԴՐՈՄԵՏԱՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, հիդրոմետալուրգիա, հանքաքարերից, խտահանքերից և տարբեր արդ. թափոններից մետաղների կորզումը՝ քիմ. ռեագենտների ջր. լուծույթներում լուծելու և այդ լուծույթներից մետաղները կամ նրանց միացություններն անջատելու եղանակով (օր.՝ ցեմենտացմամբ, էլեկտրոլիզով ևն): Մեծ կիրառություն ունի մի շարք մետաղների արտադր–յան մեջ:

«ՀԻԴՐՈՇԻՆԱՐԱՐ», շաբաթաթերթ (1957–69, Երևան): «Հայհիդրոէներգոշին» վարչության պաշտոնաթերթը: Հաջորդել է «Քանաքեռշին» (1932–39), «Հարվածային շինարարություն» (1949–57) պարբ–ներին:

ՀԻԴՐՈՊՈՆԻԿԱ (< *հիդրո...* և հուն.՝ ponos – աշխատանք), **ջրաբուսաբուծություն**, բույսերի անհող (արհեստ. միջավայրում) աճեցումը՝ արհեստ. լցանյութերի վրա սննդարար լուծույթի պարբերաբար մատակարարման եղանակով, որն անհրաժեշտ է բույսերի բնականոն աճի ու զարգացման համար: Հ–ի տեսակներ են ջր., օդ. և գլաքար. աճեցումը: Բացօթյա Հ–ի պայմաններում (աղուտների, քարքարոտ հողերի, ավազուտների վրա) աշխարհում առաջինը ՀՀ–ում մշակվել է վարդաբույր խորդենու անհող արտադր–յան նոր տեխնոլոգիա: Տես նաև ***Հիդրոպոնիկայի հիմնախնդիրների ինստիտուտ***:

ՀԻԴՐՈՊՈՆԻԿԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ Գագիկ Դավթյանի անվան, ՀՀ ԳԱԱ: Կազմակերպվել է 1966–ին՝ Գագիկ ***Դավթյանի*** նախաձեռնությամբ՝ ՀԽՍՀ ԳԱ ագրոքիմիայի լաբորատորիայի (հիմն.՝ 1947) հիման վրա (մինչև 1995–ը՝ Ագրոքիմ. հիմնախնդիրների և հիդրոպոնիկայի ինստ.): Ընդգրկում է նաև Երևանի հիդրոպոնիկայի փորձարար. և Դիլիջանի անտառ. հիդրոպոնիկայի կայանները, Վաղարշապատի հիդրոպոնիկայի հենակետը: Ինստ–ում մշակել են շուրջ 50 բարձրարժեք դեղատու, եթերայուղատու, ներկատու և համեմունք. բույսերի արդ. եղանակով արտադր–յան կենսատեխնոլոգիաները, վարդաբույր խորդենու անհող արտադր–յան նոր տեխնոլոգիա և ավանդ. երկրագործության համար ոչ պիտանի տարածքների արդյունավետ յուրացման նոր համակարգ՝ «ջրաշիթային հիդրոպոնիկա»: Ինստ–ի Վաղարշապատի գիտաարտադր. բազայի վրա ստեղծվել է «Դարման» ՍՊԸ–ն, որտեղ իրագործվում են ինստ–ում մշակված կենսատեխնոլոգիաները:

ՀԻԴՐՈՍՏԱՏ (< *հիդրո....* և հուն.՝ statos – անշարժ), ստորջրյա գիտ. հետազոտությունների աշխ. ապարատ, որը ճոպանով իջեցվում է նավից: Հ–ի խցիկում (գնդաձև կամ գլանաձև) տեղավորվում է անձնակազմը (1–3 մարդ) և տեղակայվում են տարբեր սարքավորումներ: Հ. ունի աշխ–ի օբյեկտի վրա ամրանալու սարքեր, մանիպուլյատորներ, թիապտուտակներ ևն:

ՀԻԴՐՈՍՏԱՏԻԿ ԿՇՌՈՒՄ (ֆիզ.), հեղուկների և պինդ մարմինների խտությունների չափման մեթոդ. հիմնված է հայտնի խտությամբ հեղուկի մեջ ընկղմված պինդ մարմնի (***Արքիմեդի օրենքի*** համաձայն) դուրս մղող ուժի որոշման կամ հեղուկի խտության չափման դեպքում՝ հեղուկի մեջ ընկղմված հայտնի զանգվածով ու ծավալով պինդ մարմնի կշռման վրա:

ՀԻԴՐՈՍՏԱՏԻԿԱ, ***հիդրոմեխանիկայի*** բաժին. ուսումնասիրում է հեղուկի հավասարակշռությունը և դադարի վիճակում գտնվող հեղուկի ազդեցությունը նրա մեջ ընկղմված մարմինների վրա: Հ–ի օրենքները (օր.՝ ***Արքիմեդի օրենք***) լայնորեն կիրառվում են տեխնիկայում՝ զանազան հիդրավլիկ. մեքենաների և սարքերի ստեղծման ժամանակ, այդ օրենքների վրա է հիմնված ***հիդրոտեխնիկական կառույցների*** ամրության հաշվարկը:

ՀԻԴՐՈՍՏԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՐԱՆՈՑ, ոչ գլանաձև անոթում լցված հեղուկի կշիռը հավասար չէ անոթի հատակին ազդող հեղուկի ճնշման ուժին: Բացատրվում է անոթի երկրչփ. ձևով: Հայտնաբերել է Բ. ***Պասկալը***:

ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱ, գիտ–յան և տեխնիկայի բնագավառ. ուսումնասիրում է ջր. պաշարները, տնտ. նպատակներով դրանց օգտագործումը և ճարտարագիտ. կառույցների (տես ***Հիդրոտեխնիկական կառույցներ***) միջոցով ջրերի վնասակար ազդեցության դեմ պայքարը:

ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, ջր. պաշարների (գետեր, լճեր, ծովեր, գրունտ. ջրեր) օգտագործման կամ ջր. տարերքի քայքայիչ ազդեցության դեմ պայքարի համար նախատեսված կառույցներ: Ըստ տեղանքի դիրքի՝ լինում են ծով., գետ., լճային, ըստ նշանակման՝ կարգավորիչ, ափապաշտպան, նավանցային, ձկնլթող, չորացման Հ. կ.: Տարբերում են նաև վերգետնյա և ստորգետնյա Հ. կ.:

ՀԻԴՐՈՏԵՂԱՓՈՓՈՒՄ, ջրի մեջ տեղակայված անշարժ և շարժվող օբյեկտների տեղի և շարժման արագության որոշումը ձայն. ազդանշանների միջոցով. 1. **ակտիվ**, հատուկ ուղարկված ձայն. ազդանշանների՝ օբյեկտից անդրադարձման միջոցով Հ.: 2. **Պասիվ**, օբյեկտի արձակած ձայն. ազդանշանների միջոցով Հ.: Օգտագործում են նավեր, սուզանավեր, ձկների վտառներ հայտնաբերելու, նաև ռազմ. նպատակներով:

ՀԻԴՐՈՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐ, ***հիդրոդինամիկական փոխանցիչ***, որի մեջ շրջահոսվող հեղուկի հոսքը լրացուցիչ անցնում

է ռեակտորի (ուղղորդող սարք) միջով. վերջինը փոխում է հոսքի ուղղությունը և հնարավորություն է տալիս անաստիճան կարգավորել տարվող (տուրբին) լիսեռի պտտող մոմենտը և պտտման հաճախությունը: Օգտագործվում է ավտոմեքենաների, ջերմաքարշների ևնի փոխհաղորդակներում (տրանսմիսիա):

ՀԻԴՐՈՏՐՈՊՆԵՐ, հեղուկասեր ցածրմոլ. օրգ. միացություններ (սպիրտներ, ֆենոլներ, գլիկոլներ ևն), որոնք արագացնում են օրգ. նյութերի լուծումը ջրում: Սինթետիկ լվացող նյութերի լուծելիությունը մեծացնելու համար ավելացնում են սուլֆաթթուների ($R – C_6H_4SO_3M$) աղեր, որոնցում $R = C_1–C_3$, M–ը՝ K., Na, NH_4:

ՀԻԴՐՈՔԻՄԻԱ, **ջրաքիմիա**, գիտ–յուն բնական ջրերի քիմ. բաղադրության և շրջապատող միջավայրում ընթացող ֆիզ., քիմ. ու կենսբ. գործոնների ազդեցությամբ դրանց փոփոխությունների օրինաչափությունների մասին: Սերտորեն կապված է երկրաքիմիայի և ջրաերկրբ–յան հետ:

ՀԻԴՐՈՔԻՆՈՆ, *պ*–երկհիդրօքսիբենզոլ՝ $C_6H_4(OH)_2$, բաց գորշավուն բյուրեղ. նյութ, $t_{հալ.}$՝ 174°C: Օգտագործում են լուսանկարչության մեջ՝ որպես հայտածիչ, հակաօքսիդանտ է, պոլիմերման արգելակիչ և մի շարք ներկանյութերի ստացման ելանյութ:

ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, Հայպետհիդրոմետ: Կազմավորվել է 2002–ին՝ ՀՀ հիդրոօդերևութաբանության վարչության (1992) և Հիդրոօդերևութաբանության ու էկոլոգիայի գիտակիրառ. կենտրոնի (1992) միավորմամբ: Հիմն. խնդիրը վտանգավոր հիդրոօդերևութարան. երևույթներից բնակչության ու տնտ–յան պաշտպ–յունն է, մթն–ում և ջրոլորտում կատարվող երևույթների ու շարժ ընթացների մասին հաս–յանը, կառավարման մարմիններին, իրավաբ. և ֆիզ. անձանց տեղեկացնելը, Համաշխ. օդերևութաբան. կազմ–յան համաձայնագրի (ՀՀ–ն անդամակցում է 1992–ից) պարտավորությունների կատարումը ևն:

ՀԻԴՐՈՖԻԼՈՒԹՅՈՒՆ, ջրի նկատմամբ նյութի խնամակցությունը բնորոշող հատկություն, պայմանավորված է նյութի և ջրի միջև միջմոլ. փոխազդեցության ուժերով: Նյութի (գործվածքի) Հ–յամբ է պայմանավորված նրա **թրջելիությունը:** Հիդրոֆիլ նյութեր են կավը, սիլիկատները, սուլֆատները, կարբոնատները, մետաղների օքսիդները ևն:

ՀԻԴՐՈՖԻՏՆԵՐ (< *հիդրո*... և հուն.՝ phytyon – բույս), **ջրային բույսեր**, որոնք ստորին մասով ընկղմված են ջրի մեջ (ի տարբերություն հիդատոֆիտների) և ամբացած են ընահողին (օր.՝ շաքարեղեգը, բրինձը ևն):

ՀԻԴՐՈՖՈԲ ԾԱԾԿՈՒՅԹՆԵՐ (< *հիդրո*... և հուն.՝ phobos – վախ, երկյուղ), *ջրամերժ* նյութերի հիմքով չթրջվող ջրամերժ պատվածքներ: Պատում են մետաղների (խոնավ մթն–ում կոռոզիայից պաշտպանելու համար), գործվածքների, կաշվի, փայտանյութի և այլ իրերի (ջրակայունության և անթրջելիություն հաղորդելու համար) մակերեսները:

ՀԻԴՐՈՖՈԲՈՒԹՅՈՒՆ, **ջրավախություն**, նյութի մոլ–ի ջրից խուսափելու նյութի (գործվածքի)՝ ջրով չթրջվելու հատկությունն է: Հիդրոֆոբ նյութեր են մետաղները, ճարպերը, մոմանյութերը, սիլիցիումօրգ. հեղուկները, գրաֆիտը, ծծումբը, որոշ պլաստմասսաներ ևն:

ՀԻԴՐՈՒՄ, **հիդրոգենացում, ջրածնավորում**, օրգ. միացություններին ջրածնի միացման կատալիտիկ ռեակցիա: Իրականացվում է մոլ. ջրածնով՝ կատալիզողների առկայությամբ կամ ջրածնի դոնորներով (օր.՝ լիթիումի ալյումահիդրիդով): Կատալիտիկ Հ. կիրառում են արդ–յան մեջ շարժիչ. վառելանյութեր, պինդ պարաֆիններ, սպիրտներ ևն ստանալու համար: Ճարպերի Հ–ով ստանում են ***մարգարին***:

ՀԻԴՐՕՔՍԻԱՂԵՀԻԴՆԵՐ ԵՎ ՀԻԴՐՕՔՍԻԿԵՏՈՆՆԵՐ, **հիդրօքսիկարբոնիլային միացություններ**, մոլ–ում կարբոնիլ և հիդրօքսիլ խմբեր պարունակող միացություններ: Լայնորեն տարածված են բնության մեջ (սալիցիլալդեհիդ, վանիլին, ածխաջրեր ևն): Կիրառում են դեղանյութերի և բուրավետ նյութերի սինթեզում, որպես ներկանյութեր, սնկասպաններ ևն:

ՀԻԴՐՕՔՍԻԴՆԵՐ, *օքսիդների* քիմ. միացությունները ջրի հետ: Մի շարք մետաղների Հ. հիմքերն են, իսկ ոչ մետաղներինը՝ թթուները: Միաժամանակ և՛ հիմնային, և՛ թթվային հատկություններով օժտված Հ. կոչվում են ամֆոտեր: Սովորաբար «հիդրօքսիդ» տերմինը վերաբերում է միայն հիմքերին: Տես նաև ***Ալկալիներ***: Բնական Հ. են մետաղների բնական հիդրօքսիդները, որոնք առաջացնում են խոշոր հանքավայրեր (բոքսիդների, երկաթի, մանգանի, ուրանի, վանադիումի ևնի):

ՀԻԴՐՕՔՍԻԼ ԽՈՒՄԲ, **հիդրօքսիլ**, OH^- միարժեք իոնը: Մտնում է մի շարք քիմ. միացությունների՝ ջրի, հիմքերի, թթվածնավոր թթուների, սպիրտների և այլ նյութերի բաղադրության մեջ:

ՀԻԴՐՕՔՍԻԼԱՄԻՆ, NH_2OH, ջրում անսահմանափակ լուծվող անգույն բյուրեղ. նյութ, $t_{ևռ.}$՝ 32°C: Թունավոր է: Փոխազդելով թթուների հետ՝ առաջացնում են աղեր, օր.՝ $(NH_3OH)_2SO_4$: Կիրառում են կապրոլակտամի արտադր–յան մեջ և վերլուծ. քիմիայում:

ՀԻԴՐՕՔՍՈՆԻՈՒՄ, ջրածնի հիդրատացված իոնը՝ H_3O^+: Առաջանում է թթվի ջր. լուծույթում ջրածնի ազատ իոնի՝ պրոտոնի՝ ջրի մոլ–ի հետ միանալով՝ $H^+ + H_2O \rightarrow H_3O^+$:

ՀԻԵՐՈԳԼԻՖՆԵՐ (< հուն. hieros – սուրբ, griphe – փորագրված), **մեհենագրեր**, եգիպտ., չին., խեթ. և այլ գաղափարագրերի գրանշանները: Հասագույնը եգիպտ. Հ. են (ստեղծվել են մ. թ. ա. IV հզ–ամյակի վերջերից և օգտագործվել մինչև մ. թ. III դ.): Սկզբում գրվել են վերից վար, ապա՝ աջից ձախ (երբեմն՝ հակառակը): Հ–ի ընթերցումն սկսում են տեքստի այն ծայրից, դեպի ուր ուղղված են մարդկանց ու կենդանիների պատկերների դեմքերն ու ոտքերը: «Հ.» տերմինն առաջինն օգտագործել է Կլիմենտ Ալեքսանդրացին (300):

ՀԻԵՐՈՆԻՄՈՍ ՍԻՐԱԿՈՒԶԱՑԻ (մ. թ. ա. 231–214), Սիրակուզայի վերջին թագավորը՝ մ. թ. ա. 215–214–ին:

ՀԻԵՐՈՆԻՄՈՍ ՍՏՐԻԴՈՆԱՑԻ, **Սոֆրոնիուս Եվսեբիոս** (Hieronymus Sophronius, մոտ 342–420), աստվածաբան, Սուրբ գրքի թարգմանիչ, քրիստ. սուրբ: «Աստվածաշնչի» Հ. Ս–ու լատ. թարգմ–յունը («Վուլգատա») XVI–XX դդ–ում լայնորեն տարածվել է Եվրոպայում, համարվել Սուրբ գրքի՝ բացառիկ հեղինակություն վայելող միակ հավաստի տեքստը: Հեղինակ է աստվածաբան–բանավիճ. («Ընդդեմ Ռուֆինի»), պատմ. («Անվանի այրերի մասին», «Ժամանակագրություն») և մեկնող. աշխ–ների, նամակների:

ՀԻԹ (Heath) Էդվարդ Ռիչարդ (1916–2005), անգլիացի պետ. գործիչ, դիվանագետ: 1970–74–ին՝ Մեծ Բրիտանիայի վարչապետ: 1959–64–ին զբաղեցրել է նախարար. պաշտոններ: 1965–70–ին ընդդիմության, 1965–75–ին՝ պահպանողականների կուս–յան ղեկ.:

ՀԻԼ (Hill) Բեննի (Ալֆրեդ Հոտոռն, Hawthorn, 1924–1992), անգլիացի կատակերգակ դերասան: Ստեղծել է «Բեննի Հիլի շոուն» հանրահայտ ծրագիրը: Իր շոուների սցենարիստն է, երաժշտության հեղինակը և գլխ. դերակատարը:

ՀԻԼ Ջորջ Ռոյ (1921–2002), ամերիկացի կինոռեժ.: Վեստեռն ոճով նկարահանել է «Բուչ Քեսսիդի և Սանդենս Քիդ»(1969), «Սպանդանոց № 5» (ըստ Կ. Վոնեգուտի, 1972), «Խարդախություն» (1973) կատակերգությունը, «Փոքր ռոմանս» (1979) մելոդրաման, «Աշխարհը ըստ Գարպուի» (1982) հոգեբ. դրաման, «Զվարճալի ֆերմա» (1988) և այլ ֆիլմեր: «Օսկար» (1973):

ՀԻԼ, կարդամոն, կոճապղպեղազգինեռի ընտանիքի բազմամյա խոտաբույս: Աճում է Հվ. Հնդկաստանի լեռն. խոնավ անտառներում: Սերմերն օգտագործում են որպես համեմունք:

ՀԻԼԱՐԻ (Hillari) Էդմունդ (1919–2008), նորզելանդացի ալպինիստ: 1953–ին Հ. առաջինն է բարձրացել ***Ջոմոլունգմայի*** գագաթը Թենցինգի հետ: 1957–58–ին Վ. ***Ֆոքսի*** հետ ղեկավարել է անցումն Անտարկտիդայով:

ՀԻԼԲԵՐՏ (Hilbert) Դավիդ (1862–1943), գերմանացի մաթեմատիկոս: ՌԳԱ արտ. թղթ. անդամ (1922) և ԽՍՀՄ ԳԱ արտ. պատվ. անդամ (1934): Աշխ–ները մեծ ազդեցություն են թողել մաթ. բազմաթիվ բաժինների վրա (ինվարիանտների, հանրահաշվ. թվերի տեսություններ, մաթ. տրամաբ–յուն, վարիացիոն հաշիվ, դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումներ, հանրահաշվ. թվերի տեսություն, մաթ. ֆիզիկա): Ներմուծել է Հիլբերտյան տարածություն հասկացությունը, որն ***էվկլիդեսյան տարածությունն*** ընդհանրացնում է անվերջ չափանի տարածության համար:

ՀԻԼԴԵԲՐԱՆԴ (Hildebrand) Բրունո (1812–1878), գերմանացի տնտեսագետ և վիճակագիր: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1872): Քաղաքատնտ–յան պատմ. դպրոցի հիմնադիրներից:

ՀԻԼԴԵԲՐԱՆԴ (Hildebrandt) Յոհան Լուկաս ֆոն (1668–1745), ավստրիացի ճարտ.: Բարոկկոյի առաջատարներից: Կառուցել է պալատներ՝ Շվարցենբերգ (1697–1704), Ներքին (1714–16) և Վերին (1721–24) Բելվեդերներ, Դաուն Կինսկի (1713–16, բոլորը՝ Վիեննայում):

ՀԻԼԴԵԳԱՐԴ ԲԻՆԳԵՆԱՑԻ (Hildegard van Bingen, 1098–1179), գերմանացի միանձնուհի, բենեդիկտյան կույսերից, Ռուպերտսբերգ (Բինգենի մոտ) վանքի հիմնադիրը և մայրապետը (1136–ից), քրիստոնյա միստիկ բանաստեղծուհի: Նրա «Ուղեցույց կամ Երեք գիրք տեսիլքի ու հայտնության» (հրտ.՝ 1513) աշխ–յամբ Գերմանիայում դրվել է կույսերի վան. միստիկայի հիմքը: 2012–ին սրբադասվել է՝ «Եկեղեցու ուսուցիչ» պատվանունով:

ՀԻԼԴԵՍՀԱՅՄԵՐ Ազրիել (Իսրայել, Hildesheimer Azriel, 1820–1889), րաբբի:

Փիլ–յան դ–ր, հուդայականության մեջ ուղղափառ մոդեռնիզմի հիմնադիրներից: Բեռլինի րաբբիական սեմինարիայի հիմնադիրը:

ՀԻԼ (Hill) Արչիբալդ Վիվիեն (1886–1977), անգլիացի ֆիզիոլոգ: Կենսաֆիզիկայի և վիրահատ. հետազոտության հիմնադիրներից: Աշխ–ները վերաբերում են մկան. կծկման ջերմադինամիկային: Նոբելյան մրց. (1922, Օ. *Մեյերհոֆի* հետ):

ՀԻԼ Ջեֆրի (1932–2016), անգլիացի բանաստեղծ, գրականագետ, թարգմանիչ: ԱՄՆ–ի արվ–ների և գիտ–յունների ակադ–ի անդամ (1996): Հեղինակ է «Արքա Լոգը» (1968), «Tenebrae» (1978), «Սիրո հաղթարշավը» (1998), «Անվերնագիր» (2006), «Պոեմների ընտրանի» (2006), «Անրակներ» (2011), «Խախտված հիերարխիաներ: Պոեմների ժողովածու. 1952–2012» (2013), էսսեների «Ոճ և հավատ» (2003) ժող–ների, «Քննադատական ժողովածուներ» (2008), նաև անգլ. դաս. գրկ–յանը վերաբերող աշխ–ների: Գր. մի շարք մրց–ներ, Անգլիայի ասպետ (2012):

ՀԻԼ Սուզան (ծ. 1942), անգլիացի գրող: Հեղինակ է «Ձեներլմեններ և լեդիներ», «Փոփոխություն դեպի լավը» (երկուսն էլ՝ 1969), «Ամրոցում ես թագավոր եմ» (1970), «Գիշերային թռչուն» (1972), «Սևազգեստ կինը» (1983), «Օդ և հրեշտակներ» (1991), «Ստվերներ փողոցում» (2010) վեպերի, «Ալբատրոս» (1970), «Մի քիչ երգեցողություն և պար» (1973) պատմվածքների ժող–ների: Մի շարք գրկ. մրց–ներ:

ՀԻԼԼԵՐ (Hiller) Յոհան Ադամ (1728–1804), գերմանացի կոմպոզիտոր, երաժշտ. տեսաբան: *Զինգշպիլի* հիմնադիրներից («Սատանան ազատության մեջ», Ի. Շտանդֆուսի հետ, 1752): 1781–ից՝ Լայպցիգի «Գևանդհաուզ» նվագախմբի դիրիժոր: Հեղինակ է 1–ին երաժշտ. բառարաններից մեկի (1784):

ՀԻԼԼԵՐԻ (Hillery) Պատրիկ Ջոն (1923–2008), Իռլանդիայի նախագահ՝ 1976–90–ին: 1950–70–ական թթ–ին եղել է աշխ–ի, կրթության և ԱԳ նախարար:

ՀԻԼԻԱՐԴ (Hilliard) Նիկոլաս (մոտ 1547–1619), Վերածննդի շրջանի անգլիացի նկարիչ, ոսկերիչ: Հեղինակ է քնար., նուրբ–դեկորատիվ դիմանկար. մանրանկարների («Պատանին վարդի թփերի մեջ», մոտ 1588, ևն), «Մանրանկարչության արվեստ» (1600–01) աշխ–յան:

ՀԻԼՄԵՆԴ, գետ Աֆղանստանում և Իրանում: Երկ.՝ 1150 *կմ*, ավազանը՝ 500 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 400–500 *մ³/վ*: Սկիզբ է առնում *Հինդուկուշ* լ–ներից և թափվում Համուն անհոսք լիճը (Իրան):

ՀԻԼՈԶՈԻԶՄ (< հուն. hyle – նյութ, zoe – կյանք), փիլ. ուսմունք, ըստ որի՝ կյանքը, հետևաբար և զգայունակությունը հատուկ են բնության մեջ բոլոր իրերին: Հասկացությունը շրջանառության մեջ է դրել Ռ. Կեդվորդը XVII դ–ում: Հ. բնորոշ է վաղհուն. փիլ–յանը (հռնիական դպրոց, Էմպեդոկլես), մասամբ՝ սոցիալիզմին, Վերածննդի շրջանի բնափիլ–յանը (Բ. Թելեզիո, Ջ. Բրունո, S. Պարացելս), XVII դ–ի ֆրանսիացի մի շարք լուսավորիչների (այդ թվում՝ Դ. Դիդրոյի), Ֆ. Շելլինգի բնափիլ. դպրոցին և ուր.:

ՀԻԼՈԼԻ Բադրիդդին (ծ. թ. անհտ–1529), պարսիկ բանաստեղծ: Հեղինակ է «Շահը և դերվիշը», «Սիրահարների հատկանիշները», «Լեյլի և Մեջնուն» պիեսների: Իր ստեղծագործության մեջ ուզբեկ զավթիչ խանին ծաղրելու համար ենթարկվել է մահապատժի:

ՀԻԼՖԵՐԴԻՆԳ (Hilverding) Ֆրանց Անտոն Քրիստոֆ (1710–1768), ավստրիացի պարուսույց: Վիեննայի թատրոնների համար մշակել և բեմադրել է պարեր, մնջախաղեր, բալետ. *ինտերլյուդիաներ*: Առաջիններից է սովոր. դեկորատիվ դիվերտիսմենտների փոխարեն բեմադրել ամբողջ. սյուժետ. բալետ. մնջախաղեր:

ՀԻՄԱԼԱՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, Նեպալի և Հնդկաստանի մերձակա շրջանների լեզուների (բացի հնդ. և տիբեթյան լեզուներից) հավաք. անվանումը: Տարբերում են արևելահիմալայան (լիմբու, սունվար ևն), արևմտահիմալայան (կանաուրի, կանաշի ևն), կենտրոնահիմալայան (նևարի ևն) տեսակները:

ՀԻՄԱԼԱՅՆԵՐ (սանսկրիտ՝ հիմա – ձյուն, ալայա – կացարան), երկրագնդի ամենաարձր լեռն. համակարգն Ասիայում՝ Տիբեթի և Ինդոս–Գանգես. հարթավայրի միջև: Երկ.՝ 2400 *կմ*, լայն.՝ մինչև 350 *կմ*, միջին բարձր.՝ 6000 *մ*, առլզն՝ 8848 *մ* (Էվերեստ կամ Ջոմոլունգմա, երկրագնդի ամենաարձր լ–գագաթը): 11 գագաթ 8000 *մ*–ից բարձր է, կիրճերի խոր.՝ 4–5 *կմ*: Հ. լեռնագր., կլիմ. և ֆլորիստ. խոշոր անջրպետ են Կենտր. Ասիայի արևաղարձ. լանդշաֆտների միջև, ջրբաժան գիծ՝ Հնդ. օվկ–ի և Կենտր. Ասիայի անհոսք ավազանի միջև: Հ–ից են սկիզբ առնում Հս. Ասիայի գլխ. գետերը՝ *Ինդոսը, Գանգեսը, Բրահմապուտրան* ևն: Ըստ ռելիեֆի ու երկրբ. կառուցվածքի՝ Հ. բաժանվում է 3 երկայնակի աստիճանների՝ Սիվալիկյան լ–ներ (Նախահիմալայներ) և Փոքր ու Մեծ Հ.: Կան սառցադաշտեր (33 հզ. *կմ²*): Զարգացած է լեռնագնացությունը (հիմնականում՝ Նեպալում):

ՀԻՄԱՅԻՆ ԹԱՂԱՆԹ, բազալ (< հուն. basis – հիմք), սահմանային թաղանթ մարդու և ողնաշարավոր կենդանիների մոտ՝ էպիթելի (էնդոթել) և հարակից փուխր շարակց. հյուսվածքի միջև: Ամրացնում է էպիթելային բջջաշերտը:

ՀԻՄԱՉԱԼ ՊՐԱԴԵՇ, նահանգ Հնդկաստանի հս–ում: Տարածքը՝ 55,6 հզ. *կմ²*, բն.՝ 6,8 մլն (2011): Վարչ. կենտրոնը՝ *Շիմլա*:

ՀԻՄԵՋԻ, ք–նվինգստ Ճապոնիայի Հոնսյու կղզում՝ Ներքին Ճապոն. ծովի ափին: Բն.՝ 535 հզ. (2014):

ՀԻՄԵՆԱՅՈՍ, ամուսնության աստվածը հուն. և հռոմ. դից–յան մեջ: *Ապոլոնի* և մուսաներից մեկի որդին: Պատկերվել է պատանու տեսքով՝ ծաղկաշղթայով զարդարված՝ ջահը ձեռքին:

ՀԻՄԵՆՈԼԵՊԻԴՈՋՆԵՐ, մարդու և կենդանիների (կրծողներ, բադեր, սագեր) ինվազիոն հիվանդություններ (ցեստոդոզների խմբի հելմինթոզներ): Հարուցիչները ժապավենաձև որդերն են (հիմենոլեպիդներ), որոնք մակաբուծվում են աղիներում: Ախտանշանները՝ մարսողության, ԿՆՀ ֆունկցիայի խանգարումներ (մարդկանց):

ՀԻՄԼԵՐ (Himmler) Հայնրիխ (1900–1945), 3–րդ Ռայխի քաղ. և ռազմ. գլխ. գործիչներից: 1929–ից՝ ՍՍ ղեկ., 1936–ից՝ գեստապոյի պետ, 1939–ից՝ Անվտանգության կայսեր. գլխ. վարչության ղեկ.: Գերմանաֆաշիստ. համակենտրոնացման ճամբարների ստեղծման նախաձեռնողներից: 1943–ից՝ ՆԳ նախարար: 1945–ի մայիսին ինքնասպանություն է գործել: Նյուրնբերգյան դատավարության ժամանակ ճանաչվել է նացիստ. գլխ. ռազմ. հանցագործներից:

ՀԻՄՆ, **օրհներգ**, գովերգ, փառաբան. հանդիսավոր երգ. կատարվում է ի պատիվ կամ ի նշանավորումն պատմ. որևէ իրադարձության, հերոսի, գաղափարի հաղթանակի ևն: Մի շարք Հ–ներ ստեղծվել են Ֆրանս. հեղ–յան շրջանում («Հիմն ազատության», «Հիմն բանականության», «Մարսելյեզ» ևն): Տարբերում են նաև պաշտամունք., կրոն. բովանդակության Հ–եր: Տես նաև *Օրհներգ*:

ՀԻՄՆԱԹԹՎԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌԻԹՅՈՒՆ, թթվահիմնային վիճակ, ֆիզքիմ. և ֆիզիոլոգ. շարժընթացների ամբողջություն, ապահովում է օրգանիզմի ներքին միջավայրի *ջրածնային ցուցչի* (pH–ի) համեմատ. կայունությունը: Մարդու արյան pH = 7,35 – 7,47 է, որի նույնիսկ ամենափոքր տեղաշարժն անգամ անդրադառնում է նյութափոխանակության, ֆերմենտների ակտիվության վրա և հանգեցնում օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի խանգարումների:

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ, *կապիտալ*, որը ծախսվում է մեքենաներ, սարքավորումներ, շենքեր ձեռք բերելու համար: Վերադարձվում է դրամ. ձևով՝ դրանց մաշվածքի չափով ամորտիզացիոն մասհանումներ կատարելու միջոցով:

ՀԻՄՆԱԿՄԱԽՔ, կարկաս (ֆրանս.՝ carcasse –կմախք), շինվածքի, շենքի կամ շինության կմախքը. կազմված է միմյանց միացած առանձին տարրերից (ձողերից): Բնորոշում է շինվածքի (շինության) ամրությունը, կայունությունը, երկարատևությունը: Պատրաստում են փայտից, մետաղից, երկաթբետոնից և այլ նյութերից:

ՀԻՄՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ, 1. նյութի հիմնային հատկություններ դրսևորելու հատկությունը, պարզագույն դեպքում՝ թթուներով չեզոքացնելու հատկությունը: 2. (Մետաղագործ.), երկաթահանք. նյութերում, նաև դոմնային, պողպատաձուլ. և այլ խարամներում հիմնային և թթվային օքսիդների քանակ. հարաբերությունը (ըստ զանգվածի %–ով):

ՀԻՄՆԱՆՅՈՒԹ, **սուբստրատ** (լատ.՝ substratum – հիմք) (կենսբ.), 1. քիմ. նյութ, որը փոխակերպվում է ֆերմենտի ազդեցությամբ: Բջիջում Հ–ի կոնցենտրացիան ունի ֆերմենտի ակտիվությունը կարգավորող ազդեցություն: 2. Հիմք (առարկա կամ նյութ), որի մեջ ապրում են կենդանիները կամ բուս. օրգանիզմները, ինչպես նաև օրգանիզմների հիմն. բնակության և զարգացման միջավայր. օր.՝ միկրոօրգանիզմների համար սննդ. միջավայրը:

ՀԻՄՆԱՍՏԵՂՆԵՐ, **բազոֆիլներ** (< հուն.՝ bazis – հիմք և ...*ֆիլ*), բջիջներ բջջապլազմայի կառուցվածքում, որոնք ներկվում են հիմնային ներկերով, օր.՝ արյան հատիկավոր լեյկոցիտները, հիպոֆիզի առաջային բլթի որոշ բջիջներ ևն:

ՀԻՄՔԵՐ, քիմ. միացություններ, որոնք *թթուների* հետ առաջացնում են աղեր: Հ. մետաղների *հիդրօքսիդներն* են: Ջրում դիսոցվելիս առաջացնում են հիդրօքսիլ իոններ՝ OH^-: Ուժեղ Հ. կոչվում են *ալկալիներ*: *Յ. Բրենստեդի* տեսության համաձայն՝ Հ. են պրոտոն միացնելու ունակ բոլոր մոլ–ներն ու իոնները (NH_3, ամիններ ևն), իսկ ըստ *Հ. Լյուիսի*՝ Հ. են չօգտագործված էլեկտրոն. զույգ պարունակող (էլեկտրոն. զույգի դոնորներ) բոլոր նյութերը:

ՀԻՆ ԱՇԽԱՐՀ, Հին Հունաստանի և Հին Հռոմի, ինչպես նաև Հին Արևելքի զարգացման անտիկ շրջանի անվանումը պատմագրության մեջ:

ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔ, Մերձ. և Միջին Արևելքի, Հվ. և Արլ. Ասիայի, Հս. և Հս–արլ. Աֆրիկայի երկրների ընդհ. անվանումը, որը վերաբերում է ստրկատիրության ծագման և գոյության շրջանին (մ. թ. ա. IV–I հզ–ամյակ):

ՀԻՆ ԿԱՍՏԻԼԻԱ (Castilla la Vieja), պատմ. մարզ Իսպանիայի հս–ում, մեծ մասամբ՝ Կաստիլյան սարահարթում (Մեսետա): Ընդգրկում է Սանտանդեր, Պալենսիա, Բուրգոս, Լոգրոնիո, Վալյադոլիդ, Սորիա, Սեգովիա, Ավիլա նահանգները: Տարածքը՝ 66,1 հզ. *կմ*²: Գլխ. ք.՝ Բուրգոս: XI դ–ում դարձել է անկախ պետություն: Հ. Կ–ի և Արագոնի թագավորությունների միավորմամբ ձևավորվել է Իսպանիա միացյալ պետությունը (1516):

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ, **Հին ուխտ**, Աստվածաշնչի նախաքրիստ. շրջանի՝ հուդայական սրբազան գրքերի ժող.: Եկեղեցին այդ գրքերն անվանել է Հ. կ.՝ ի զանազանություն զուտ քրիստ. սրբազան գրքերի՝ Նոր կտակարանի: Հ. կ–ում ներառված են հնավանդ ժամանակագրություններ, պատմ. զրույցներ, ասքեր, առասպելներ, զանազան ձոներ, աղոթերգեր, կանոններ՝ ծիս. մաքրագործումների ու զոհաբերումների մասին, կրոնափիլ. քննախոսություններ, սիրավեպեր: Հ. կ–ի վերջն. օրենսկարգումը VII–IX դդ–ում կատարել են մասորանները (հրեա հեղինակներ):

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆ, տես *Գրաբար*:

ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ, անտիկ պետություն. ընդգրկել է Էգեյան ծովը՝ իր կղզիներով, թ–կղզու հվ. մասը և Փոքր Ասիայի արմ. ափը: Երկիրը բաժանվել է 3 գլխ. մասերի՝ հս., միջին, որոնք կոչվել են *Հելլադա*, և հվ., որը կոչվել է *Պելոպոնես*: Հ. Հ–ի տարեգրությունն սկսվել է անհիշելի ժամանակներից և ավարտվել մ. թ. IV դ–ով, երբ այն մտել է Բյուզ. կայսրության մեջ: Հ. Հ–ից է սկսվել ժամանակակից քաղաքակրթությունը:

ՀԻՆ ՊԱՐՍԿԵՐԵՆ, **հին իրանական լեզու**, ավանդվել է *Ավեստայի* լեզվով և մ. թ. ա. VI–IV դդ–ի Աքեմենյան դինաստիայի թագավորների սեպագիր արձանագրություններով (հնագույն աղբյուրը Դարեհ թագավորի հայտնի *Բեհիսթունյան արձանագրությունն* է): Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի իրան. ճյուղին:

«ՀԻՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԳՐԱՊԱՀՈՒԹ», փաստաթղթերի (պահվել են ԱԳ կոլեգիայի մոսկովյան արխիվի և այլ գրադարաններում) և Ռուսաստանի պատմության պատմ. ուսումնասիրությունների ռուս. 1–ին ծավալուն պարբ. հրտ–ը (մաս 1–10, 1773–75, 2–րդ հրտ.՝ մաս 1–20, 1788–91)՝ Ն. Ի. *Նովիկովի* նախաձեռնությամբ և կայսրուհի *Եկատերինա II*–ի աջակցությամբ: Աշխ–ներին մասնակցել են Ի. Ն. Բանտիշ–Կամենսկին, Գ. Ֆ. Միլլերը, Մ. Մ. Շչերբատովը և ուր.: 1786–1801–ին լույս է ընծայվել «Հին ռուսական գրապահոցի շարունակությունը» (մաս 1–11):

ՀԻՆ ՌՈՒՍԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, IX դ–ի վերջին քաոորդում Արլ. Եվրոպայում՝ արլ– սլավոն. 2 գլխ. կենտրոնների՝ Նովգորոդի և Կիևի՝ Ռյուրիկովիչների հարստության ներկայացուցիչների իշխանության ներքո միավորումից ստեղծված պետություն: 882–ին իշխան Օլեգը գրավել է Կիևը և այն դարձրել պետության մայրաքաղաք: 988–989–ին Վլադիմիր I Սվյատոսլավիչը քրիստոնեությունը ընդունել է որպես պետ. կրոն: XII դ–ի 2–րդ կեսին պետությունը մասնատվել է 2 առանձին իշխանությունների՝ Նովգորոդի և Պսկովի:

ՀԻՆ ՏՈՄԱՐ, տես *Օրացույց*:

ՀԻՆ ՔԱԼԴԻ ԴԱՐ, **պալեոլիթ**, *քարի դարի* երկու հիմնական ժամանակաշրջաններից առաջինը: Հնագույն հուշարձաններն ավելի քան 2,5 մլն տարեկան են: Բաժանվում է 3 ենթաշրջանների՝ ստորին, միջին և վերին: Ժամանակակից հնագիտ. աշխ–ներում առանձնացնում են օլդուվայան, *աշելյան*, *մուստիերյան* մշակութ. դարաշրջանները: Այդ պարբերացումը մասնակիորեն է կիրառվում Աֆրիկայի, Հվ. և Հվ–արլ. Ասիայի, Ամերիկայի ու Ավստրալիայի Հ. ք. դ–ի համար: Միջին Հ. ք. դ–ում առաջացել է մարդու արդի ֆիզ. տիպը՝ homo sapiens–ը (բանական մարդ): Հ. ք. դ. փոխարինվել է *միջին քարի դարով* (մեզոլիթ) կամ *նոր քարի դարով* (նեոլիթ): Հայկ. լ–աշխարհը նախամարդու ձևավորման օրրաններից է:

ՀԻՆԱ, խնա (արաբ.), կարմրադեղին ներկ. ստանում են լավսոնիայի (հինայի ծառ) թփերի տերևներից: Օգտագործում են գործվածքները (բրդե, մետաքսե), մազերն ու եղունգները ներկելու համար: Երբեմն Հ. են անվանում բույսը (անփուշ լավսոնիան), որից ստանում են ներկը:

ՀԻՆԱԼ, Սևանի լ–շղթայի ամենաբարձր լ–գագաթը (3367 *մ*) Սևանի և Մոձավի լ–շղթաների հանգուցակետում: Կազմված է վերին կավճի նստվածք. ապարներից: Լանջերը զառիթափ են, ժայռոտ, լանդշաֆտը՝ լ–մարգագետնային:

ՀԻՆԱՄԱԶԻԿ (Impatiens), **զգայնուկ, անժուժիկ**, զգայնուկազգիների ընտանիքի միամյա կամ բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 400 (այլ տվյալներով՝ 700) տեսակ, ՀՀ–ում՝ 1՝ սովոր. Հ.՝ Արագածոտնի, Կոտայքի, Տավուշի, Սյունիքի մարզերում: Բարձր.՝ 80–120 *սմ*: Պտուղը երկարավուն տուփիկ է, որի փեղկերը թեթևակի հպումից կամ ցնցումից անսպասելիորեն բացվում են, իսկ սերմերը ցրվում ու տարածվում են: Դեղաբույս է, պարունակում է ածխաջրեր, աղաղանյութեր, C վիտամին, ներկանյութ ևն: Կիրառվում է շաքարախտի, ռևմատիզմի, միզաքար. հիվանդության ժամանակ:

ՀԻՆԱՅԱՆ (սանսկրիտ – բառացի՝ փոքր անիվ, փոքր կամ նվազ վնասակար ուղի), բուդդայականության հիմն. ուղղություններից, տարածվել է Շրի Լանկայում, Մյանմայում, Թաիլանդում և այլուր: «Ազատագրման» (փրկության ուղի) բուդդայական իդեալը Հ–ում դրսևորվել է արտաքին գործոններից անկախ՝ անձի կատարելագործմամբ, որպես *արհաթի* իդեալ: Հ. զարգացրել է *դհարմանների* մասին ուսմունքը: Հիմն. փիլ. դպրոցներն են սաուտրանտիկան, վայբհաշիկան:

«ՀԻՆԳԵՐՄԱՆ ՇԱՐԱՍՅՈՒՆ», գեն. *Ֆրանկոյի* գործակալության անվանումը. գործել է Հանրապետ. Իսպանիայում 1936–39–ի ազգ–հեղ. պատերազմի ժամանակ: Տերմինն առաջացել է 1936–ի հոկտ–ին, երբ ֆաշիստ. խոռվարարները 4 շարասյունով հարձակվել են Մադրիդի վրա, իսկ հինգերորդը (գործել է քաղաքում) վճռական պահին պետք է հարվածեր թիկունքից: ԵՀՊ–ի ժամանակ «Հ. շ.» են կոչվել տարբեր երկրներում գործող ֆաշիստ. գործակալությունները, որոնք օգնել են ֆաշիստ. զորքերին զավթելու այդ երկրները:

«ՀԻՆԳՇԱԲԹԻ», տեղեկատվ., ժամանց. շաբաթաթերթ (1997–ից, Գյումրի): Հիմնադիր–տնօրեն՝ Արմեն Մարտիրոսյան, խմբ.՝ Տիգրան Ավետիսյան:

ՀԻՆԴԵՄԻԹ (Hindemith) Պաուլ (1895–1963), գերմանացի կոմպոզիտոր, ալտահար, դիրիժոր, երաժշտ. տեսաբան: Հեղինակ է օպերաների («Նկարիչ Մատիսը», 1938, «Աշխարհի հարմոնիան», 1957, ևն), սիմֆոնիաների, կոնցերտների (1925, ալտի և նվագախմբի համար), կամեր–գործիք. անսամբլների, դաշնամուր. սոնատների, խմբերգ. երկերի, կոմպոզիցիայի դասագրքի (հ. 1–3, 1937–70): Յ. Ս. Բախի(1951), Յ. Սիբելիուսի (1955) անվ. մրց–ներ:

ՀԻՆԴԵՆԲՈՒՐԳ (Hindenburg) Պաուլ ֆոն (1847–1934), Գերմանիայի նախագահ՝ 1925–ից, գեն–ֆլդմ. (1914): ԱՀՊ–ի ժամանակ՝ 1914–ի նոյեմբ–ից՝ Արլ. ռազմաճակատի հրամ., 1916–ի օգոստ–ից՝ ԳՇ պետ, փաստացի՝ գլխ. հրամ.: 1933–ի հունվ. 30–ին իշխանությունը հանձնել է նացիոնալ–սոցիալիստներին՝ հանձնարարելով Հիտլերին կազմել կառ–յուն:

ՀԻՆԴԻ, Հնդկաստանի պետ. լեզուն: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի հնդիրան. ճյուղի հնդ. խմբին: Օգտագործում է հնդ. *դևանագարի* գրատեսակը:

ՀԻՆԴԼՅԱՆ Հովհաննես (1866–1950), մանկավարժ, հաս. գործիչ: 1909–ին Կ. Պոլսում Գալուստ *Մալաթյանի* հետ հիմնադրել է *Նոր դպրոց* կրթօջախը: Հեղինակ է «Նոր դասագիրք ֆրանսերէնէ ի հայ թարգմանութեան» (1891), «Փունջ մանկավարժական բանախօսութեանց» (1901), «Ուսուցանելու մեթօդ» (1908), «Անկեղծ էջեր» (հ. 1–4, 1913–22), «Դաստիարակին անբաժանելի ընկերը» (1925), «Քսան եւ հինգ տարուա կեանք մը» (1934), «Ծնողք–ներուն» (հ. 1–3, 1957–59) և այլ գրքերի: Կատարել է թարգմանություններ:

ՀԻՆԴՈՒԱՐ, ք. Հնդկաստանի Մադհյա Պրադեշ նահանգ–ում: Բն.՝ 1,261 մլն (ագլոմերացիայով՝ 2,167 մլն, 2011): Համանուն օկրուգի վարչ. կենտրոնն է:

ՀԻՆԴՈՒԻԶՄ, **հնդուիզմ, հնդուականություն**, աշխարհում տարածված կրոնների (Հ–ի հետևորդների մոտ 95 %–ն ապրում է Հնդկաստանում): Ձևավորվել է I հազարամյակում՝ վեդայական կրոնի, բրահմայականության և ժող. հավատալիքների համադրման արդյունքում: Հ–ի հիմքում հոգիների վերամարմնավորման (*սանսարա*) մասին ուսմունքն է, որը տեղի է ունենում առաքինի կամ վատ վարքագծի համար հատուցման օրենքի (*կարմա*) համապատասխան. այն որոշվում է գերագույն աստվածների (*Վիշնու* կամ *Շիվա*) կամ նրանց մարմնավորումների պաշտամունքով և կաստայական կենցաղ. կանոնների կատարմամբ: Հ–ում սրբացվում են կենդանիները (կով, օձ ևն), գետերը (Գանգես), բույսերը (լոտոս) ևն: Հ–ին բնորոշ են համընդհ. գերագույն աստվածության մասին պատկերացումները, որոնք հատկապես դրսևորվել են *բհակտիում*: Ժամանակակից Հ. ունի 2 ուղղություն՝ *վիշնուականություն* և *շիվաականություն*:

ՀԻՆԴՈՒԿՈՒՇ (պարսկ.՝ հինդոկուխ–հնդ. լեռ), լ–համակարգ Աֆղանստանում, Պակիստանում և Հնդկաստանում: Երկ.՝ մոտ 800 *կմ*, լայն. ՝ 50–300 *կմ*, բարձր.՝ մինչև

7690 *մ* (Տիրիչմիր լ.): Գլխ. լ–շղթաները՝ Բաբա, Պագման և բուն Հ.: Բաժանվում է Արմ. (3500–4000 *մ* գերակշռող բարձր-ներով), Կենտր. (մինչև 6059 *մ*) և Արլ. (6000 *մ*–ից բարձր) մասերի: Ծածկված է սառցադաշտերով (6200 *կմ*²): Բնորոշ է ուժեղ սեյսմիկությունը: Վերընթաց գոտիականությամբ տարածվում են կիսաանապատայինից մինչև բարձրլեռն. նիվալ կամ ցուրտ անապատ. գոտու լանդշաֆտները:

ՀԻՆԴՈՒՍՏԱՆ, 1. լայն իմաստով՝ Հնդկաստանի անվանումը, Հս. Հնդկաստանը (ի հակադրություն Դեկանի): 2. Նեղ իմաստով՝ հինդուստանցիների բնակության պատմ. մարզը, որը ներառում է Գանգես գետի հովիտը՝ Դելիից մինչև Վարանասի շրջանը: Ներկայում Հ. համընկնում է մոտավորապես Ուտար Պրադեշ մարզի տարածքին:

«ՀԻՆԴՈՒՍՏԱՆ ԹԱՅՄՍ» (“Hindustan Times” – «Հինդուստանի ժամանակ»), հաս–քաղ. օրաթերթ (1923–ից, Դելի՝ անգլ.):

ՀԻՆԴՈՒՍՏԱՆՑԻՆԵՐ, ժողդ, *Հինդուստանի* հիմն. բնակչությունը: Ընդհ. թիվը՝ 490 մլն (2006): Կազմված է տեղ. մեծաթիվ խմբերից: Լեզուն՝ հինդի: Հիմնականում հինդուական են, մի մասը պահպանում է ավանդ. հավատալիքները:

ՀԻՆԻ (Heaney) Շեյմաս (1939–2013), իռլանդացի գրող, թարգմանիչ: Հեղինակ է «Բնապաշտի մահը» (1966), «Խավարի դուռը» (1969), «Հյուսիս» (1975), «Զղջման կոզի» (1984), «Իրերի տեսիլքը» (1991), «Հոգու մակարդակ» (1996) բանաստեղծությունների ժող-ների, էսսեների: Թարգմանել է *«Բեովուլֆ»*-ը (2000), որը դարձել է բեստսելլեր: Հայ. է հրատարակվել Հ–ի «Բանաստեղծություններ: Տուրք պոեզիային» (2010) ժող–ը: Նորելյան մրց. (1995):

ՀԻՆՇԵԼՎՈՒԴ (Hinshelwood) Սիրիլ Նորման (1897–1967), անգլիացի ֆիզքիմիկոս: Շղթ. ռեակցիաների տեսության ստեղծողներից: Լոնդոնի թագավոր. ընկ-յան նախագահ (1955–60), ԽՍՀՄ ԳԱ արտ. թղթ. անդամ (1958): Աշխ-ները վերաբերում են շղթ. ճյուղավորված շարժընթացների կինետիկային և մեխանիզմներին: Նորելյան մրց. (1956, Ն. Ն. *Սեմյոնովի* հետ):

ՀԻՆՏ (Hint) Աադու (1909/10–1989), էստոնացի գրող: Էստ. ԽՍՀ վաստ. (1955), ժող. (1965) գրող: Հեղինակ է «Քամիների ափը» (հ. 1–4, 1951–66, կինոնկար՝ 1971) և այլ վեպերի, «Իր կղզին» (1977) և այլ վիպակների, նաև պիեսների:

Էստ. ԽՍՀ Պետ. (1950, 1967), Ֆ. Տուգլասի անվ. գր. (1982) մրց–ներ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ, հայ. ձեռագիր մատյաններում և հնատիպ գրքերի վերջում հավելվածի ձևով տրվող տեղեկություններ՝ գրչության վայրի և թվականի, պատվիրատուի և ստացողի, գրիչի և կազմողի, գրչության կամ տպագրման հանգամանքների առանձին մանրամասների մասին: Հ–ում զետեղված տեղեկությունները հաճախ օգնել են ճշգրտելու ձեռագիր գրության ժամանակը, այս կամ այն պատմ. իրադարձության մանրամասներ:

ՀԻՇՈՂ ՍԱՐՔ, տեղեկույթի գրառման, պահպանման և կոդով ներկայացված տացքի սարք: Օգտագործում են հաշվող. մեքենաներում, ավտոմատ կառավարման համակարգերում, հեռուստամեխանիկայում, ծրագր. կառավարման տեխնալոգ. ագրեգատներում: Հ. ս–ի հիմն. հարաչափերն են տարողունակությունը (միաժամանակ պահպանվող տեղեկույթի ծավալը՝ մի քանի տասնյակ *բայթից* մինչև մի քանի հգ. Գբայթ և ավելի) և շրջանառության ժամանակը (2 հերթական շրջանառությունների միջև ընկած ժամանակը՝ մի քանի տասնյակ *նվ*–ից մինչև մի քանի *մվ*):

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ, ԿՆՀ–ի ֆունկցիա, իմացական գործընթաց, երբ արտաքին աշխարհից ու ներքին միջավայրից ընկալված երևույթները, տպավորությունները մտապահվում են նյարդ. բջիջների կառուցվածքներում և անհրաժեշտության դեպքում վերարտադրվում ու կիրառվում են:

ՀԻՋՔՈՔ (Hitchcock) Ալֆրեդ (1899–1980), ամերիկ. կինոյի անգլիացի ռեժ.: Նկարահանել է «Շանտաժ» (1929), «Պարան» (1948), «Գլխապտույտ» (1958), «Հոգեգարություն» (1960), «Թռչուններ» (1963), «Ընտանեկան դավադրություն» (1975) և այլ ֆիլմեր, որտեղ օգտագործելով կինոյի տարբեր արտահայտչամիջոցներ, ստեղծել է սարսափի և հեգնանքի յուրահատուկ մթն.: Ամերիկայի կինոյի ինստ–ի պատվո շքանշան, Մեծ Բրիտանիայի ասպետ:


ՀԻՊԱՐԻՈՆ, ձիազգիների ընտանիքի անհետացած կաթնասուն: Ապրել է ուշ միոցենից մինչև պլիոցենի վերջը՝ բոլոր մայրցամաքներում (բացի Հվ. Ամերիկայից և Ավստրալիայից): Մնդավի բարձր.՝ մինչև 1,5 *մ*, իրանի երկ.՝ 2 *մ*:

ՀԻՊԱՐՔՈՍ (մ. թ. ա. մոտ 180/190–125), հույն գիտնական, աստղագիտ-յան հիմնադիրներից: Կատարել է երկնքի առաջին համակարգված դիտումներ ու հետազոտություններ: Բացահայտել է *Արեգակի* և *Լուսնի* պտույտի օրինաչափությունները, որոշել Լուսնի հեռ-յունը Երկրից, կազմել Արեգակի խավարումների ցուցակը, տվել աստղերի դասակարգումը՝ ըստ տեսանելի 6 մեծությունների (պայծառությունների): Բացահայտել է *պրեցեսիայի* երևույթը, որոշել աստղ. և արևադարձ. տարիների տևողությունները, *խավարածրի* թեքությունը հասարակածի նկատմամբ:

ՀԻՊԵՐ... (հուն.՝ hyper – գեր, վրա, վերև), բառաբարդությունների նախածանց. նշանակում է՝ 1. վերևում գտնվելը, 2. բնականոն չափի գերազանցումը (օր.՝ հիպերտոնիա՝ *գերճնշում*):


ՀԻՊԵՐԲՈԼ, (հուն.՝ hiperbole), 2–րդ կարգի հարթ *հանրահաշվական կոր*, որը հարթության բոլոր այն կետերի երկրչփ. տեղն է, որոնց հեռ-յունների տարբերությունը հարթության տվյալ 2 կետերից՝ Հ–ի կիզակետերից (F_1, F_2), հաստատուն է և հավասար A_1A_2 իսկ. առանցքի երկյանը, մյուս առանցքը՝ B_1B_2, կոչվում է կեղծ: Հ. ուղիղ շրջ. կոնն իր 2 խոռոչով անցնող հարթությամբ հատելուց առաջացած կորն է: Ունի 2 ասիմպտոտներ: *Դեկարտյան կոօրդինատներում* (նկ.) Հ–ի հավասարումն է $x^2/a^2 - y^2/b^2 = 1$, որտեղ 2a–ն M կետից մինչև կիզակետերը եղած հեռ-յունների տարբերությունն է՝

$2a = F_1M - F_2M$, $b = \sqrt{c^2 - a^2}$, $c = OF_1 = OF_2$:



Հ–ի O կենտրոնով անցնում են նրա C_1C_2 և D_1D_2 ասիմպտոտները: Հ. համաչափ է իր իրական և կեղծ առանցքների նկատմամբ, Հավասարակողմ Հ–ի a=b և նրա ասիմպտոտները փոխուղղահայաց են միմյանց: Եթե դրանք ընդունենք որպես կոօրդինատ. առանցքներ, Հ–ի հավասարումը կունենա $y = k/x$ տեսքը:

ՀԻՊԵՐԲՈԼԱԿԱՆ ՊԱՐՈՒՐԱԳԻԾ, հարթ կոր, որը գծում է ուղղի վրա պտտվող M կետը, երբ այն շարժվում է այնպես, որ նրա հեռ-յունը պտտման O կենտրոնից փոխվում է պտտման անկյանը հակադարձ համեմատականորեն:




ՀԻՊԵՐԲՈԼԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ, ֆունկցիաներ, որոնք որոշվում են

$shx = \frac{e^x - e^{-x}}{2}$ – հիպերբոլ. սինուս,

$chx = \frac{e^x + e^{-x}}{2}$ – հիպերբոլ. կոսինուս,

$thx = \frac{sh\,x}{ch\,x}$ – հիպերբոլ. տանգենս բանաձևերով:




Հ. ֆ–ի միջև հիմն. առնչություններն են՝ $ch^2x - sh^2x = 1$, $ch'x = shx$, $sh'x = chx$, $thx = 1/ch^2x$:

ՀԻՊԵՐԲՈԼԻԴ (< *հիպերբոլ* և հուն.՝ eidos – տեսք), **հիպերբոլանման**, 2–րդ կարգի չփակվող մակերևույթներ: Լինում են միախոռոչ և երկխոռոչ: Հ. ունի համաչափության 3 փոխուղղահայաց հարթություններ և համաչափության 3 փոխուղղահայաց առանցքներ, որոնք անցնում են նրա կենտրոնով: Եթե այդ առանցքներն ընտրված են որպես դեկարտյան կոօրդինատների համակարգ, ապա Հ–ի հավասարումներն են՝

$\frac{x^2}{a^2} + \frac{y^2}{b^2} - \frac{z^2}{C^2} = 1$ (միախոռոչ) և

$\frac{x^2}{a^2} + \frac{y^2}{b^2} - \frac{z^2}{C^2} = -1$ (երկխոռոչ):



Հ–ները բոլոր հնարավոր հարթություններով հատելիս ստացվում են բոլոր ***կոնական հատույթները*** (*էլիպս,* հիպերբոլ, *պարաբոլ*), ինչպես նաև ուղիղների զույգ՝ միախոռոչ Հ–ի դեպքում: Վերջինս գծավոր մակերևույթ է, որի յուրաքանչյուր կետով անցնում են իրեն պատկանող 2 ուղիղ: Եթե a = b, ապա OZ առանցքի

շուրջը ցանկացած պտույտի դեպքում Հ. վերլուծվում է ինքն իրեն: Այսպիսի Հ. կոչվում է պտտման հիպերբոլոիդ:

ՀԻՊԵՐԳԱՄԻԱ (< հուն. hyper – վրա, վերև և gamos – ամուսնություն), 1. սովորույթ, որն արգելում էր որոշակի սոցիալ. շերտի կնոջն ամուսնանալ ավելի ցածր կարգավիճակ ունեցող տղամարդու հետ: 2 Կնոջ ամուսնությունն ավելի բարձր սոցիալ. կարգավիճակ ունեցող տղամարդու հետ:

ՀԻՊԵՐԳԻԱ (< *հիպո*... և հուն.՝ ergon – աշխատանք, գործողություն), **հիպոռեակտիվություն**, օրգանիզմի թույլ դիմադրողականությունն արտաքին միջավայրի հիվանդածին գործոնների հանդեպ: Հ-ի ժամանակ գերակշռում են հիվանդության ջնջված ձևերը՝ երկարատև թորշոմած ընթացքով: Իմունիտետի նյութափոխանակային ռեակցիաները և օրգանիզմի ֆիզիոլոգ. տոնուսը նվազում են:

ՀԻՊԵՐԹԻՐԵՈԶ [< *հիպեր*... և լատ.՝ (glandula) thyreoidea – վահանագեղձ], վահանագեղձի ֆունկցիայի ուժեղացումը տարածուն թունավոր խպիպի, նաև ախտաբան. և ֆիզիոլոգ. վիճակների (օր.՝ հղիության) ժամանակ:

ՀԻՊԵՐԻՆՖԼՅԱՅԻԱ, ապրանքների գների (որպես կանոն՝ ամսական ավելի քան 50 %) և շրջանառության մեջ գտնվող դրամ. զանգվածի բացառիկ արագ աճը: Հ. կտրուկ արժեզրկում է դրամ. միավորը, խախտում վճարային շրջանառությունն ու բնականոն տնտ. կապերը: Սովորաբար պայմանավորված է քաղ. ու տնտ. արտակարգ գործոններով՝ պատերազմով, տնտ-յան քայքայմամբ, կառ-յան քաղ-յան պատճառով դրամ. միավորի նկատմամբ վստահության կորստով են:

ՀԻՊԵՐԻՈՆ, *Սատուռնի* արբանյակ: Հայտնաբերել է Ջ. Ֆ. *Բոնդը* (ԱՄՆ, 1848): Հեռ-յոնը Սատուռնից՝ 1,48 մլն *կմ*, ամենամեծ տրամագիծը՝ մոտ 350 *կմ*, պտտման սիդերիկ պարբերությունը՝ 21 օր 6 *ժ* 39 *ր*:

ՀԻՊԵՐԿԻՆԵԶ (< *հիպեր*... և հուն.՝ kinesis – շարժում), **գերշարժունություն**, ակամա շարժումներ նյարդ. համակարգի օրգ. և ֆունկցիոնալ խանգարումների ժամանակ: Հ-ների շարքին են դասվում աթետոզը, միոկլոնիան, խորեան, տիկը ևն:

ՀԻՊԵՐՁԱՅՆ, 10^9-ից մինչև 10^{12}–10^{13} *Հց* հաճախության ***առաձգական ալիքներ***: Ֆիզ. բնույթով ոչնչով չի տարբերվում անդրաձայնից ($2\cdot10^4$ – 10^9 *Հց*): Օդում բնական պայմաններում Հ. չի տարածվում՝ ուժեղ կլանման հետևանքով: Նյութի ատոմների ջերմ. տատանումները **բնական Հ.** են, իսկ **արհեստական Հ.** գրգռացվում է հատուկ ճառագայթիչներով:

ՀԻՊԵՐՄԻԶՈՒԿ (ֆիզ.), անկայուն ատոմային միջուկ, որը, ***նուկլոններից*** բացի, պարունակում է նաև ***հիպերոններ***: Հ. առաջանում է միջուկ. փոխակերպման հետևանքով՝ բարձր էներգիայի մասնիկների ազդեցությամբ:

ՀԻՊԵՐՆԵՖՐՈՄ (< *հիպեր*... և հուն.՝ nephros – երիկամ և ...*ոմա*), մակերիկամի կեղևային բջիջներից առաջացած ուռուցք (իսկական Հ.), սովորաբար բարորակ է: Երբեմն սխալմամբ անվանում են երիկամի ***ադենոկարցինոմա:***

ՀԻՊԵՐՈՆՆԵՐ (ֆիզ.), ***նեյտրոնների*** զանգվածներից մեծ զանգվածով և ***միջուկային ժամանակի*** համեմատությամբ կյանքի ավելի մեծ տևողությամբ անկայուն ***բարիոններ***: Օժտված են ներքին յուրահատուկ բնութագրով՝ ***տպատրիհնայությամբ***: Գոյություն ունեն **լամբդա** (Λ), **սիգմա** (Σ), **քսի** (Ξ) և **օմեգա** (Ω) Հ.:

ՀԻՊԵՐՊԱՐԱԹԻՐԵՈԶ [< *հիպեր*... և լատ.՝ (glandula) paratyreoidea – հարվահանագեղձ], ներզատ. հիվանդություն՝ պայմանավորված հարվահանագեղձի պարաթիրեոիդ հորմոնի ավելցուկ. արտադր-յամբ՝ հատկապես հարվահանագեղձի գեղձուռուցքի (ադենոմա) դեպքում: Դրսևորվում է ոսկրերի կակղումով, ախտաբան. կոտրվածքներով, երիկամի քարերի և ստամոքսի խոցի առաջացմամբ:

ՀԻՊԵՐՊԼԱԶԻԱ (< *հիպեր*... և հուն.՝ plasis – առաջացում, գոյացում), հյուսվածքների կառուցվածք. տարրերի (բջիջներ, թելքեր) թվի ավելացումը նրանց ավելցուկ. գոյացման հետևանքով, օր.՝ օրգանի ֆունկցիայի ուժեղացման, բորբոքման, նախաքաղցկեղի, բույսերի մոտ գալերի առաջացման դեպքերում:

ՀԻՊԵՐՏՈՆԻԿ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐ (կենսբ.), լուծույթներ, որոնց օսմոտիկ ճնշումը բարձր է օրգանիզմի բջիջների օսմոտիկ ճնշումից:

ՀԻՊԵՐՏՈՆԻԿ ԿՐԻԶ, արյան զարկերակ. ճնշման հանկարծակի բարձրացումը հիպերտոնիկ հիվանդության և որոշ այլ հիվանդությունների ժամանակ: Ուղեկցվում է գլխացավերով, գլխապտույտով, փսխումներով, սրտի ցավերով, տեսողության վատացմամբ: Նման դեպքում հարկավոր է անհապաղ դիմել շտապ բուժօգնության:

ՀԻՊԵՐՏՈՆԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, սիրտանոթ. համակարգի հիվանդություն, բնորոշվում է արյան զարկերակ. ճնշման բարձրացմամբ՝ պայմանավորված հոգեկան վնասվածքներով և ԿՆՀ-ի գերլարվածությամբ: Կարևոր դեր է կատարում ժառանգ. նախատրամադրվածությունը: Դրսևորումները կախված են առավելապես գլխուղեղի (գլխացավեր, գլխապտույտ, դյուրագրգռություն), սրտի, երիկամների, ակնահատակի արյան անոթների ախտահարումներից: Առանց կանոնավոր բուժման՝ Հ. հ. կարող է հանգեցնել սրտամկանի ինֆարկտի, սրտային անբավարարության, կաթվածի և երիկամի կարծրախտի (նեֆրոսկլերոզ):

ՀԻՊԵՐՏՐՈՖԻԱ (< *հիպեր*... և հուն՝ trophe – սնուցում), **գերաճ**, օրգանի կամ նրա առանձին մասի ծավալի մեծացումը: Տարբերում են ֆիզիոլոգ. (օր.՝ աթլետների մկանների, հղիության ժամանակ՝ արգանդի) և ախտաբան. (օր.՝ սրտի արատների դեպքում՝ սրտամկանի) Հ.:

ՀԻՊՆՈՊԵԴԻԱ (< հուն. hypnos – քուն և paideia – ուսուցում), ուսուցում խորը քնի ժամանակ: Փորձն. տվյալները վկայում են, որ Հ. բնական եղանակով ուսուցմանը փոխարինել չի կարող:

ՀԻՊՆՈՍ, քունն անձնավորող աստված հուն. դից-յան մեջ, Թանատոսի եղբայրը: Պատկերվել է թևավոր պատանու կամ քնած տղայի տեսքով, ձեռքին՝ կակաչ և ոչ մեծ եղջյուր:

ՀԻՊՆՈՍ (հուն.՝ hypnos – քուն), մարդու և բարձրակարգ կենդանիների քնանման վիճակ, որն առաջանում է ներշնչմամբ, գանգուղեղի կեղևի ոչ լրիվ արգելակմամբ: Տարբերում են փոքր Հ. (քնկոտություն)՝ նիրհային վիճակ, մկան. թուլություն, միջին Հ. (ինոտաքսիա)՝ ներշնչմամբ, երբեմն՝ ինքնաբերաբար առաջացող մկան. լարվածություն (կատալեպսիա), խոր Հ. (սոմնամբուլիզմ)՝ խոր քուն, որի ժամանակ հիպնոսվողն արտաքին գրգիռները չի ընկալում՝ բացառությամբ հիպնոսողի հետ կապի՝ ուղեղի արթուն օջախի միջոցով:

ՀԻՊՈ... (հուն.՝ hypo – տակ, ներքև), բարդ բառերի սկզբնամաս. ցույց է տալիս ներքևում գտնվելը (օր.՝ ***հիպոդերմա*** ենթամաշկ), բնականոնից նվազ լինելը (օր.՝ ***հիպոտոնիա*** թերճնշում):

ՀԻՊՈԳԱԼԱԿՏԻԱ (< *հիպո*... և հուն.՝ gala, սեռ. հոլ.՝ galaktos – կաթ), կերակրող մայրերի կաթնագեղձերի կաթնարտադր-յան նվազումը ոչ ճիշտ սնման, թունավորումների, կաթնագեղձի բորբոքման, ԿՆՀ-ի հիվանդությունների ժամանակ:

ՀԻՊՈԴԵՐՄԱ (< *հիպո*... և հուն.՝ derma – մաշկ), **ենթամաշկ**, անողնաշար կենդանիների էպիթելային հյուսվածքի բարակ շերտ, որը տեղադրված է կուտիկուլայի տակ և արտադրում է այն: Բույսերի մոտ բջիջների մեկ կամ մի քանի շերտ՝ տեղադրված ցողունների, տերևների, սերմերի և պտուղների էպիդերմիսի կամ արմատների էպիբլեմի (մազակիր շերտ) տակ:


ՀԻՊՈԴԵՐՄԱՏՈԶՆԵՐ, որոճող կենդանիների ինվազիոն հիվանդություններ, որոնք հարուցվում են հիպոդերմա ցեղի բոռների տարբեր տեսակների թրթուրներով: Տնտ. վնասն արտահայտվում է կաթնատվության նվազմամբ, կենդանիների քաշի անկումով, կաշվի վնասումներով: Մարդկանց մոտ գրանցվում են բոռների թրթուրների ախտահարումից առաջացած միազների դեպքեր:

ՀԻՊՈԹԱԼԱՄՈՒՍ, տես *Ենթատեսաթումբ*:

ՀԻՊՈԹԵՐՄԻԱ (< *հիպո*... և հուն.՝ therme – ջերմություն), **թերջերմություն**, մարդու և տաքարյուն կենդանիների մարմնի ջերմաստիճանի նվազումը, երբ ջերմատվության կենսընթացները գերազանցում են ջերմարտադր-յունը: Հանգեցնում է օրգանիզմի կենսագործունեության նվազման, բարձրացնում թթվածնային քաղցի հանդեպ նրա կայունությունը: Որպես բուժ. մեթոդ՝ կիրառում են արհեստ. Հ., տեղայինը՝ արյունահոսության, վնասվածքի, բորբոքումների ժամանակ, ընդհանուրը՝ արյան շրջանառության ժամանակավոր դադարեցում պահանջող վիրահատությունների դեպքում:

ՀԻՊՈԹԻՐԵՈԶ [< *հիպո*... և լատ.՝ (glandula) thyreoidea – վահանագեղձ], վահանագեղձի ֆունկցիայի անբավարարություն: Պատճառները՝ գեղձի հիվանդությունները, հիպոֆիզի ախտահարումները ևն: Ծանր ձևերից են միքսեդեման, կրետինիզմը:

ՀԻՊՈԽՈՂԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ, պտուտակ. ատամնավոր փոխանցում՝ խաչվող առանցքներ ունեցող կոնական անիվների միջոցով, որոնց նախնական կոների գագաթները չեն համընկնում, իսկ ատամները շեղ են կամ կորագիծ: Կիրառվում են ավտոմոբիլների և տրակտորների տանող անիվների շարժաբերներում, ջերմաքարշնեռում, տեքստիլ արդ-յան մեքենաներում, ճշգրիտ հաստոցներում ևն:



ՀԻՊՈԼԻՏՈՒՍ ՀՌՈՄԵԱՑԻ (Hippolytus Romanus, մոտ 170–մոտ 235), քրիստոնյա գրող և մտածող, Հռոմի պրեսբիտեր (քհն.), սուրբ, հավանաբար՝ Իրենիուս Լիոնցու աշակերտը: Պատմության մեջ

առաջինը նա է պայքարել (217–235) օրինական ընտրված Հռոմի Ուրբանոս I և Պոնցիանոս պապերի դեմ: 235-ին կամավոր հրաժարվել է եպիսկոպոսությունից: Հեղինակ է «Հերձվածողների մերկացումը» և այլ բանավիճ., նաև դավանաբանաբանավիճ., ջատագով. մենկնող. աշխ-ների (բոլորը՝ հուն.):

ՀԻՊՈԿԵՆՏՐՈՆ, **ներքնակենտրոն**, զանգվածների տեղաշարժման սկզբնակետը (աշխարհագր. կոորդինատներն ու խոր-ը)՝ երկրաշարժի օջախում: Խոր.՝ մինչև 700 *կմ*:

ՀԻՊՈԿՐԱՏ, **Հիպոկրատես** (մ. թ. ա. 460–377), հույն բժիշկ, անտիկ բժշկության բարենորոգիչ, փիլ., «բժշկության հայրը»: Հ. հիվանդությունը դիտել է որպես զարգացող երևույթ, ժխտել դրա գերբնականությունը: Հիվանդների հետազոտման ժամանակ օգտվել է զննման, շոշափման, ընդբախման և լսման մեթոդներից: Նկարագրել է բազմաթիվ ախտանշաններ և համախտանիշներ: Ժամանակակից բժշկության մեջ պահպանվել են «Հ-ի երդում», «Հ-ի ժողովածու», «Հ-ի դեմք», «Հ-ի դիմակ», «Հ-ի եղունգ», «Հ-ի աթոռ», «Հ-ի ծփման աղմուկ» և այլ եզրույթներ: Նրա աշխ-ներից օգտվել են Մխիթար Հերացին, Գրիգորիսը, Ամիրդովլաթ Ամասիացին և ուր.:

ՀԻՊՈԿՐԱՏ ՔԻՈՍԱՑԻ, մ. թ. ա. V դ-ի 2-րդ կեսի հույն երկրաչափ: Երկրչփյան առաջին համակարգված շարադրանքի (մեզ չի հասել) հեղինակն է, որը հավանաբար ընդգրկել է Էվկլիդեսի «Սկզբունքների» առաջին 4 գրքի նյութը:

«ՀԻՊՈԿՐԱՏԻ ԴԻՄԱԿ», նկարագրել է Հիպոկրատը, որպես որովայնի խոռոչի ծանր հիվանդությունների ախտանշախումբ (փոս ընկած աչքեր, սրված քիթ, սառը քրտինքի կաթիլներով պատված կապտավուն-գունատ մաշկ):

ՀԻՊՈԿՐԵՆԵ (Իպոկրենե), ոգեշնչման աղբյուր հինհուն. դից-յան մեջ: Առաջացել է մուսաների Հելիկոն լ-ան վրա Պեգասի սմբակի հարվածից՝ (այստեղից էլ՝ անվանումը՝ «ձիու աղբյուր»): Փխր. իմաստով՝ ներշնչման աղբյուր:


ՀԻՊՈՊԱՐԱԹԻՐԵՈԶ [< *հիպո*... և լատ.՝ (glandula) parathyreoidea – *հարվահանագեղձ*], ներզատ. հիվանդություն՝ պայմանավորված հարվահանագեղձի հյութազատ. ֆունկցիայի անբավարարությամբ (օր.՝ վնասվածքների դեպքում, վիրահատություններից հետո): Հ-ի ժամանակ կալցիումի փոխանակության խանգարումը հանգեցնում է տետանիայի:

ՀԻՊՈՊԼԱԶԻԱ (< *հիպո*... և հուն.՝ plasis – առաջացում, գոյացում), օրգանիզմի որևէ հյուսվածքի, օրգանի, մարմնի մասի կամ ամբողջ օրգանիզմի թերզարգացում (թերաճում): Տես նաև *Ապլազիա*:

ՀԻՊՈՍՏԱՍ (հուն.՝ hypostasis – էություն, հիմք), **սուբստանց, էություն**: Հասկացությունը ներմուծել է հույն փիլ. Պոսիդոնիոսը մ. թ. ա. I դ-ում: Քրիստոնեության մեջ, հայրաբանությունից սկսած, «Հ.» (դրսևորման ձև, գոյության միջոց իմաստով) կիրառվում է *Սուրբ Երրորդության* ամեն անդամի (Հայր, Որդի և Սուրբ Հոգի) նշանակման համար:

ՀԻՊՈՏՈՆԻԱ (< *հիպո*... և հուն.՝ tonos – լարում), 1. օրգանի կամ համակարգի տոնուսի նվազումը: 2. Զարկերակ. արյան ճնշման անկումը՝ վարակիչ, նյարդ., ներզատ. և այլ հիվանդությունների հետևանքով. ուղեկցվում է գլխացավերով, գլխապտույտով, ընդհ. թուլությամբ: Հնարավոր է նաև ֆիզիոլոգ. Հ.՝ առողջ մարդկանց մոտ:

ՀԻՊՈՑԻԿԼՈՒԴՆԵՐ ԵՎ ԷՊԻՑԻԿԼՈՒԴՆԵՐ (< *հիպո*..., հուն.՝ epi – վրա, մոտ, կից և kyklocides – շրջանաձև), կորեր, որոնք գծվում են շրջանագծի որևէ կետով, երբ այդ շրջանագիծն առանց սահքի գլորվում է մեկ այլ՝ անշարժ շրջանագծով: Շրջանագծերի ներքին շոշափման դեպքում կորերը կոչվում են **հիպոցիկլոիդներ**, արտաքին շոշափման դեպքում՝ **էպիցիկլոիդներ**:



ՀԻՊՈՔԼՈՐԱՅԻՆ ԹԹՈՒ, HClO, թույլ, անկայուն թթու: Առաջանում է քլորը ջրում լուծելիս: Գոյություն ունի միայն նոսր ջր. լուծույթներում: Ուժեղ օքսիդիչ է: Հ. թ. և նրա աղերը՝ *հիպոքլորիտները*, կիրառում են որպես սպիտակեցնող և ախտահանող միջոցներ:

ՀԻՊՈՔԼՈՐԻՏՆԵՐ, *հիպոքլորային թթվի* աղերը, օր.՝ $Ca(ClO)_2$: Օգտագործում են գործվածքեղենը, թուղթը, թաղանթանյութը սպիտակեցնելու համար, թունավորող նյութերը գազազերծելու, քլորպիկրին ստանալու համար, որպես ախտահանող միջոց:

ՀԻՊՈՔՍԱՆՏԻՆ, պուրինային հիմք, նուկլեոպրոտեիդների փոխանակության միջանկյալ նյութ: Առաջանում է մարդկանց և կենդանիների օրգանիզմների հյուսվածքներում նուկլեինաթթուների քայքայման ժամանակ, օքսիդանում է՝ առաջացնելով *քսանտին*, ապա՝ միզաթթու: Աննշան քանակներով մտնում է *ռիբոնուկլեինաթթուների* մեջ:

ՀԻՊՈՖԻԶ, **ստորին մակուղեղ** (hypophysis cerebri, glandula pituitaria), մարդու և ողնաշարավոր կենդանիների ներզատիչ գեղձ, որը կարևոր դեր է կատարում հորմոն. կարգավորման կենսընթացում: Զանգվածը՝ 0,5–0,6 *գ*: Տեղակայված է գլխուղեղի հիմի մոտ և կազմված է 3 բլթից՝ առաջային (ադենոհիպոֆիզ), միջին (միջանկյալ) և հետին (նեյրոհիպոֆիզ): Սերտորեն կապված է ենթատեսաթմբի (հիպոթալամուս) հետ, որի բջիջներն արտադրում են ռիլիզինգ-հորմոններ: Վերջիններս խթանում կամ ընկճում են առաջային բլթի հորմոնների (ադրենոկորտիկոտրոպ, սոմատոտրոպ, լյուտեինացնող, ֆոլիկուլախթանող, պրոլակտին) արտադր-յունը:

ՀԻՊՊԻ (անգլ.՝ hippie), երիտասարդության բողոքի շարժում «հակամշակույթի» շրջանակներում: Առաջացել է ԱՄՆ-ում 1960-ական թթ-ին՝ ընդդեմ ժամանակի բյուրոկրատիզմի ու ամբողջատիրության:

ՀԻՊՊՈԴԱՄՈՍ ՄԻԼԵԹԱՑԻ (Hippodamos z Miletu), մ. թ. ա. V դ-ի ճարտ-քաղաքաշինարար, տեսաբան: Իր մշակած քաղաքաշին. հատակագծման համակարգը կիրառել է Պիրեևս (մ. թ. ա. 446–445-ից հետո)՝ նվինգատ-ի, Հվ. Իտալիայի Ֆուրիոս (մ. թ. ա. 444–443) հուն. գաղութի վերակառուցման և այլ աշխ-ներում:

ՀԻՊՈՒՐԱԹՈՒՐ, բենզոիլամինաքացախաթթու, բենզոիլգլիցին՝ $C_6H_5CONHCH_2COOH$, բենզոյական թթվի և գլիցինի մնացորդներից կազմված միացություն: Հայտնաբերել է Յ. *Լիբիխը* ձիու մեզի մեջ (այդտեղից՝ անվանումը՝ ձիու միզաթթու): Առաջանում է մարդկանց և մի շարք կենդանիների լյարդում և արտազատվում մեզով: Կլինիկայում Հ-ի սինթեզի և օրգանիզմից արտազատվելու արագության որոշումը կիրառում են լյարդի թունավոր նյութերի վնասազերծող ունակությունը պարզելու համար:

ՀԻՋԱԶ, պատմ. մարզ. Սաուդյան Արաբիայում: VII դ-ի սկզբին *Մուհամմեդ* մարգարեն այստեղ ստեղծել է մահմեդ. համայնք, որը դարձել է Արաբ. խալիֆության միջուկը: *Մեքքան* և *Մեդինան* դարձել են մահմեդականների սուրբ ք-ներ: 1517–1916-ին (ընդմիջումներով)՝ Օսմ. կայսրության կազմում, 1916–25-ին՝ անկախ թագավորություն. 1925-ին նվաճել է Իբն Սաուդը:

ՀԻՋՐԱ (արաբ. – վերաբնակեցում), *Մուհամմեդ* մարգարեի և առաջին մահմեդականների վերաբնակեցումը *Մեքքայից* Յասրիբ (այժմ՝ *Մեդինա*): Տեղի է ունեցել 622-ի սեպտ-ին: Օմար I (634–644) խալիֆի օրոք Հ. դարձել է մահմեդ. թվականության սկիզբը (16.07.622-ից):

ՀԻՍ (His) Վիլհելմ (1831–1904), գերմանացի անատոմ և սաղմնաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1885): Առաջարկել է սաղմի «վերակառուցման» մեթոդ: Սաղմնաբան. հետազոտություններում առաջինն է կիրառել մանրահատվածքը (միկրոտոմ):

ՀԻՍԱՐԻԿ, բլուր Փոքր Ասիայում՝ Էգեյան ծովի ափին (Չակկալե, Թուրքիա), որի ստորոտում հայտնաբերվել են *Տրոյայի* մնացորդները:

ՀԻՍՄԱՐՅԱՆ Հովհաննես, **Մամբրե** (1827–1916), արձակագիր, գր., մշակութ. գործիչ: 1851–52-ին՝ Կ. Պոլսի *«Բանասէր»* պարբերագիրք-ժող-ի, 1852-ին՝ «Ժուռնալ ազիատիկ դը Կոստանտինոպլ» (ֆրանս.) պարբ-ի հրտ.: Հեղինակ է «Խոսրով եւ Մաքրուհի» (1851), «Նեռն կամ Կատարած աշխարհի» (1867) ռոմանտիկ. վեպերի, «Կարճառօտ պատկեր Նարոլէոն Պոնապարթէին վարուցը» (1847), ««Դիւան», որ է տաղարան» (1871) երկերի:

ՀԻՍԱՐՅԱՆ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Միջին Ասիայում՝ Պամիրա-Ալայան լեռն. համակարգի արմ-ում (Ուզբեկստան և Տաջիկստան): Երկ.՝ մոտ 200 *կմ*, բարձր.՝ մինչև 4643 *մ*: Զրրաժան է Զերավշանի և Ամուդարյայի ավազանների միջև: Կենտր. մասում է Իսկանդերկուլ (2176 *մ*) լիճը, հվ-ում՝ *Հիսարյան հովիտը*:


ՀԻՍԱՐՅԱՆ ՀՈՎԻՏ, միջլեռն. իջվածք Տաջիկստանում՝ *Հիսարյան լեռնաշղթայի* հվ., Բաբադաղ, Կարատաու և այլ լ-ների հս. ծայրամասերի միջև: Երկ.՝ 70 *կմ*, լայն.՝ մինչև 20 *կմ*, բարձր.՝ 700–1000 *մ*: Կլիման ցամաքային է, հուլիսի միջին ջերմաստիճանը 29°C է, հունվ-ինը՝ –0,7°C, տարեկան տեղումները՝ 520 *մմ*: Աշակում են բամբակենի, քնջութ, ցորեն, խորդենի, մրգեր: Հ. հ-ում է Տաջիկստանի մայրաքաղաք *Դուշանբեն*:

ՀԻՍԱՐՈ ԱԼԱՅ, լեռն. երկիր Միջին Ասիայի հվ-ում՝ Ղրղզստանում, Ուզբեկստանում, Տաջիկստանում: Երկ. արմ-ից արլ.՝ շուրջ 900 *կմ*: Բարձր.՝ մինչև 5489 *մ* (Չիմտարգա լ.): Գլխ. լ-շղթայի կատարներին բնորոշ է ալպ. ռելիեֆը՝ հավերժ. ձնածածկույթով և սառցադաշտերով:

ՀԻՍՏԱՄԻՆ, հյուսվածք. հորմոն, հիստիդին ամինաթթվի ածանցյալը: Պարունակվում է ոչ ակտիվ (կապված) ձևով՝

մարդկանց և կենդանիների տարբեր օրգաններում ու հյուսվածքներում: Ազատ ձևի է անցնում ալերգ. ռեակցիաների, շոկի, այրվածքների ժամանակ: Առաջացնում է արյան անոթների լայնացում, հարթ մկանունքի կծկում, ստամոքսում բարձրացնում է աղաթթվի արտազատումը նև: Օգտագործվում է բժշկության մեջ:

ՀԻՍՏԵՐԵԶԻՍ (հուն.՝ histerezis – ուշացում), նյութի վիճակը բնութագրող ֆիզ. մեծության (ֆեռոմագնիսանյութի M մագնիսացվածության, սեգնետաէլեկտրիկի P բևեռացման նև) փոփոխության հետ ընկնելն արտաքին պայմանները բնորոշող ֆիզ. մեծությունների (H մագնիս. և E էլ. դաշտերի լարումներ) փոփոխություններից: Հ. դիտվում է, երբ մարմնի վիճակը արտաքին պայմաններով բնութագրվում է ժամանակի ոչ միայն տվյալ, այլև նախորդող պահերին: M-ի ոչ միարժեք կախվածությունը H-ից, P-ինը՝ E-ից, H-ի, E-ի ցիկլային փոփոխությունների դեպքում պատկերվում են Հ-ի օղակով (նկ.):



Մագնիսական հիստերեզիսի օղակը. *M –մագնիսացվածություն, H – մագնիսական դաշտի լարում*

ՀԻՍՏԵՐԻԱ (հուն.՝ hysteria – արգանդ), հոգեծին (պսիխոգեն) հիվանդություն, որը բնորոշվում է ցուցադր. հուզ. ռեակցիաներով, ջղաձգություններով, անցողիկ լուծանքներով, զգացողության կորստով, խլությամբ, կուրությամբ, գիտակցության մթագնումով, զգայախաբություններով նև: Անձի հատուկ կերտվածք է, որին բնորոշ են դատողությունների մակերեսայնությունը, ներշնչվելիությունը, երևակայամոլությունը, տրամադրության անկայունությունը, իր վրա ուշադրություն գրավելու ձգտումը, վարքի թատերականությունը (կոչվում է հիստերիկ պսիխոպաթիա): Պատճառը երկար ժամանակ համարվել է արգանդի «թափառումը»:

ՀԻՍՏԻԴԻՆ, α–ամինա–β–ի միդզոլիլպրոպիոնաթթու, հետերոցիկլիկ խումբ պարունակող ամինաթթու: Մտնում է մի շարք սպիտակուցների բաղադրության մեջ: Ելանյութ է ***հիստամինի*** և մկանների կենսաակտիվ պեպտիդների՝ կառնոզինի և անզերինի կենսասինթեզի ժամանակ: Կենդանիների մեծ մասի համար անփոխարինելի է, մարդու օրգանիզմում սինթեզվում է սահմանափակ քանակությամբ:

ՀԻՍՏՈ..., հիստիո... (հուն.՝ histos, histon – հյուսվածք), բարդ բառերի սկզբնամաս. ցույց է տալիս կենդանի օրգանիզմի հյուսվածքներին վերաբերելը (օր.՝ ***հիստոգենեզ***):

ՀԻՍՏՈԳԵՆԵԶ, հյուսվածքառաջացում, կենդ. օրգանիզմներում օրինաչափորեն ընթացող կենսընթացների ամբողջություն, որոնք ապահովում են հյուսվածքների առաջացումը, գոյատևումը և վերականգնումը՝ տարբեր օրգաններում իրենց առանձնահատուկ հատկություններով հանդերձ:

ՀԻՍՏՈՆՆԵՐ, հիմնային հատկություններով օժտված սպիտակուցներ, որոնք մտնում են էուկարիոտների բջիջների կորիզների մեջ՝ ԴՆԹ-ի հետ կոմպլեքսների (քրոմային, նուկլեոսոմներ) կազմում:

ՀԻՍՈՒՆԱԿԱՆՆԵՐ (հոգեզալատական՝ ներ), քրիստ. աղանդ: Ձևավորվել է XIX դ-ի վերջ–XX դդ-ում ԱՄՆ-ում: Անվանումը կապված է Գործք առաքելոցում հիշատակվող ***Հոգեգալստյան օրոնի*** հետ, երբ Սբ Հոգին Քրիստոսի Հարության 50-րդ օրն իջել է առաքյալների վրա, որի շնորհիվ նրանք կարողացել են քարոզել օտարալեզու ժողո-ների մեջ: Հ. չեն ընդունում քրիստ. եկեղեցու պաշտոն. ծեսերը, սրբապատկերները, խաչը: Հայաստանում զանազան անուններով գործում են Հ-ի տարատեսակ խմբեր՝ «Կյանքի խոսք», «Ավետարանի հավատի քրիստոնյաներ» նև:

ՀԻՄՈՒ ՔՐԻՍՏՈՍ, ըստ քրիստ. կրոնադավանաբանության՝ քրիստոնեության հիմնադիրը, Աստծու Միածին Որդին (Մեկն Ամենա, Հոր և Սբ Հոգու համագոյակիցը ***Սուրբ Երրորդությունից***), Աստծու Օծյալը և աշխարհի Փրկիչը (***Մեսիա***), որն ինքնակամ ընդունել է տառապանքներ և մահ՝ խաչվելով հանուն նախածին մեղքից (***Ադամի և Եվայի*** մեղսագործությունից) մարդկության ազատման: Հ. Ք., քարոզելով Աստծու թագավորության հաստատումը, կանչելով իր 12 աշակերտներին, կատարել է բազմաթիվ հրաշքներ՝ բժշկումներ (նաև հոգեկան հիվանդներին, հանգուցյալներին հարություն է տվել, ջրի վրայով քայլել, 5 հացով հազարավոր մարդկանց կերակրել): ***Զատկից*** առաջ Հ. Ք. ավանակի վրա նստած հանդիսավոր կերպով մտել է Երուսաղեմ, դիմավորող ամբոխը նրան կոչել է Փրկիչ: Հ. Ք. առաքյալների հետ կատարել է զատկական ընթրիքի ծեսը (***Խորհրդավոր ընթրիք***): Հուդա Իսկարիովտացու մատնությամբ («Հուդայի համբույր») Հ. Ք. ձերբակալվել է, և Սինեդրիոնի դատարանը նրան դատապարտել է մահապատժի՝ խաչելության, որն էլ իրականացվել է հռոմեացի կառավարիչ Պիղատոս Պոնտացու որոշմամբ: Մահվանից և հաջորդող Հարությունից հետո, որը նշանավորվում է մահվան և սատանայի դեմ տարած հաղթանակ, և մարդկանց հնարավորություն է ընձեռում միանալու Աստծու հետ, Հ. Ք. 40 օրերի ընթացքում զրույցներ է ունեցել իր աշակերտների հետ և համբարձվել երկինք: Համբարձումից 50 օր անց ուղարկել է խոստացված Սբ Հոգին՝ հաստատելով քրիստ. եկեղեցին: Հ. Ք-ի անվան հետ է կապված նոր կրոնի՝ քրիստոնեության ծագումը: Աշխարհ գալով մարդու փրկության համար՝ Հ. Ք. ոչ միայն միջնորդ և բարեխոս եղավ Աստծու և մարդու միջև, այլև նոր փոխհարաբերություն հաստատեց նրանց միջև. վերականգնվեց մարդու՝ «Աստծու Որդի» կոչվելու պատիվը: Հ. Ք-ի երկր. կյանքը և քարոզները ներկայացված են ***Նոր կրակարանում***: Որոշ հետազոտողներ (հատկապես՝ XIX դ-ի) մերժել են Հ. Ք-ի գոյությունը: Ժամանակակից գիտնականների մեծ մասն ընդունում է Հ. Ք-ի պատմ. անձ լինելը:

ՀԻՎԱՆԴԱՅՈՒԹՅՈՒՆ, հիվանդության տարածվածությունը բնակչության մեջ կամ նրա առանձին խմբերում: Վիճակագր. ցուցանիշ է. բնութագրում է բնակչության առողջ. վիճակը որոշակի տարածքում՝ 100 հզ. կամ 10 հզ. բնակչի հաշվով՝ 1 տարում:

Բժշկ. հիմնարկներում հաշվառում են ընդհ. Հ., աշխատունակության ժամանակավոր կորստով Հ., վարակիչ, մասնագիտ. և այլ հիվանդություններով Հ.:

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, օրգանիզմի բնականոն կենսագործունեության խանգարում՝ պայմանավորված ֆունկցիոնալ կամ (և) ձևաբան. փոփոխություններով: Մարդու և կենդանիների Հ. դասակարգում են որոշակի նոզոլոգ. սկզբունքով, եթե հայտնի են նրա պատճառները, ախտածնությունը, օրգաններում բնորոշ փոփոխությունները (տես ***Համախտանիշ***): Կենդանիների Հ-ներից տուժում է գղտ-յունը, դրանց որոշ հարուցիչներ վտանգավոր են նաև մարդու համար. առաջացնում են, օր., բրուցելոզ, տրիխոֆիտիա և այլ Հ-ներ: Բույսերի և կենդանիների վարակիչ (վիրուս., բակտերիային, սնկային նև) Հ-ների հետ մեկտեղ նկատվում են միջավայրի անբարենպաստ աբիոտիկ գործոններով պայմանավորված ախտաբան. կենսընթացներ: Բույսերի Հ-ները վնաս են հասցնում գղտ-յանը և անտառտնտ-յանը:

«ՀԻՆԱՉԻ» (ճապոն.՝ Հիտաճի, բառացի՝ լուսաբաց), ճապոն. ֆինանսաարդ. խումբ Տոկիոյում: Հիմնադրվել է 1910-ին Հիտաճի ք-ում (Տոկիոյից հս՝ Իբարակի նահանգում): Արտադրում է արդ. և էներգետիկ., էլեկտրոն., կենցաղ. տեխնիկա, ավտոմատացման միջոցներ, բժշկ. սարքավորումներ: Վերջին տարիներին (ներառում է շուրջ 1100 ընկ.) գերակա ուղղություններն են էլեկտրակայանների սարքավորումների, քիմ. արդ-յան, նավաշինության, նորագույն համակարգիչների արտադրությունները: Հասույթը՝ 112 մլրդ ԱՄՆ դոլար, աշխատողների թիվը՝ 372 հզ. (2011):

ՀԻՏԼԵՐ (Hitler, իսկական ազգանունը՝ Շիկլգրուբեր, Schicklgruber) Ադոլֆ (1889–1945), 1921-ից՝ ֆաշիստ. (Նացիոնալ-սոց. բանվ.) կուս-յան ղեկ. (ֆյուրեր), Գերմանիայի ֆաշիստ. պետության ղեկ. (1933-ին՝ ռայխսկանցլեր, 1934-ին՝ նաև նախագահ): Գերմանիայում հաստատել է ֆաշիստ. ահաբեկչ. վարչակարգ: ԵՀՊ-ի անմիջական սանձազերծողը: Խորհրդ. զորքերի Բեռլին մուտք գործելուց հետո ինքնասպան է եղել կայսեր. գրասենյակի գետնահարկում: Նյուրնբերգյան դատավարությամբ ճանաչվել է ռազմ. գլխ. հանցագործ:

ՀԻՏԼԵՐՅՈՒԳԵՆԴ, ֆաշիստ. երիտասարդ. կազմ-յուն Գերմանիայում 1926–45-ին: Գործել է նացիստ. կուս-յան անմիջ. հսկողության ներքո: Նպաստել է փողոցներում բռնության տարածմանը:

ՀԻՏՉԻՆԳՈՒ (Hitchings) Ջորջ Հերբերտ (1905–1998), ամերիկացի կենսաքիմիկոս և դեղաբան: Աշխ-ները վերաբերում են պիրեմիդինային համակարգերի քիմիա-յին, նուկլեինաթթուների հակամիտաբոլիտներին, ուռուցքների քիմիաթերապիային, հակաբակտերիային և իմունաճնշիչ պատրաստուկների ստեղծմանը:

Նոբելյան մրց. (1988, Ջ. ***Բևթի*** և Գ. ***Էլայոնի*** հետ):

ՀԻՐԱՅՈՒԿԱ, ք. Ճապոնիայի Հոնսյու կղզում: Բն.՝ 257 հզ. (2014):

ՀԻՐԻԿ (Iris), **զամբեղ,** հիրիկազգիների ընտանիքի բազմամյա կոճղարմատավոր կամ սոխուկավոր խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 250 տեսակ, ՀՀ-ում՝ 16՝ կովկաս., Պրիլիպկոյի, ցածր կղմինդրաձև, Գրոսհեյմի, գայլի, տարօրինակ, նրբագեղ, ցանցավոր նև: Որոշ տեսակներ բնական բուսուտների կրճատման պատճառով գրեթե անհետացման եզրին են, ուստի բոլոր 16 տեսակն էլ գրանցված են ՀՀ Կարմիր գրքում: Որոշ տեսակներ օգտագործվում են բժշկության և օծանելիքի արտադր-յան մեջ:

ՀԻՐԻԿԱԶԳԻՆԵՐ, միաշաքիլ բույսերի ընտանիք: Սովորաբար բազմամյա խոտաբույսեր են (հաճախ՝ էֆեմերանմաններ) կամ մշտադալար կիսաթփեր: Հայտնի է 1800 տեսակ (մոտ 80 ցեղ)՝ երկրագնդի գրեթե բոլոր շրջաններում: Հատկապես բազմատեսակ են Հվ. Աֆրիկայում: Մի շարք Հ. ունեն գեղեցիկ ծաղիկներ, օգտագործվում են գեղազարդիչ այգեգործության մեջ, այդ թվում՝ ***հիրիկը***, թրաշուշանը ևն: Որոշներն արժեքավոր դեղաբույսեր են:

ՀԻՐՈՀԻՏՈ (1901–1989), Ճապոնիայի կայսր՝ 1926–ից: 1921–26–ին՝ գահապահ (ռեգենտ): Գեներալիսիմուս (1921), Մեծ Բրիտանիայի պատվո գեն. (1921), պատվո ֆլղմ. (1930, տիտղոսը հետ են կանչել 1942–ին):

ՀԻՐՈՍԻԳԵ, Անդո Հիրոսիգե (1797–1858), ճապոնացի գրաֆիկ, գունավոր փայտափորագրության վարպետ: Հեղինակ է ժանր. մոտիվներով քնար. կամեր. բնանկարների («Տոկայդոյի ճանապարհի 53 կայարանները», 1833–34): Օգտագործել է եվրոպ. տարած. եռանկարի կառուցվածքը:

ՀԻՐՈՍԻՄԱ, ք. Ճապոնիայում՝ Հոնսյու կղզու հվ–արմ–ում, համանուն պրեֆեկտուրայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,17 մլն (2010): Կան մեքենաշին. (այդ թվում՝ նավաշինություն, նավանորոգում), հաստոցագործիք., տեքստիլ, ռետինատեխ., փայտամշակման, թղթի, սննդի արդյան և այլ ձեռն–ներ: 1945–ի օգոստ. 6–ին առաջին ատոմ. ռումբն ԱՄՆ–ն նետել է Հ–ի վրա. զոհվել է 140 հզ. մարդ, ավերվել է քաղաքի զգալի մասը: Ի հիշատակ այդ պայթյունի՝ կառուցվել է Խաղաղության պարկ (1955, ճարտ.՝ Կ. Թանգե) խորհրդանշ. ճարտ. համալիրը: 1959–ից Հ–ում անցկացվում են խաղաղության ամենամյա փառատոներ:

ՀԻՐՏ (Hirt) Հերման (1865–1936), գերմանացի լեզվաբան: Երիտքերական. դպրոցի ներկայացուցիչ: Հետազոտել է հնդեվրոպ. լեզուների շեշտը, ձայնդարձը: Հայտնի է Հ–ի «Հնդեվրոպական քերականություն» (հ. 1–7, 1921–37) աշխ–ը:

ՀԻՐՅԵԲՐՈՒԽ (Hirzebruch) Ֆրիդրիխ Էռնստ Պետեր (1927–2012), գերմանացի մաթեմատիկոս: ՌԳԱ արտ. անդամ (1983): Աշխ–ները վերաբերում են հանրահաշվ. երկրչփ–յանը, հանրահաշվ. տոպոլոգիային, կոմպլեքս վերլուծությանը:

Վոլֆի մրց. (1988, Իսրայել), ՌԳԱ Լոբաչևսկու (1989) և Մ. Վ. Լոմոնոսովի ոսկե (1996) մեդալներ:

ՀԻՐՈՒԴԻՆ (լատ.՝ hirudo – տզրուկ), հակամակարդիչ, պոլիպեպտիդ, որը պարունակվում է տզրուկի թքագեղձերում և որոշ օձերի թույնի մեջ: Ընկճելով թրոմբին ֆերմենտի ակտիվությունը՝ խոչընդոտում է արյան մակարդումը, որի վրա է հիմնված տզրուկների կիրառումը բժշկության մեջ: Օժտված է ցավը հանգստացնող և հակաբորբոք. հատկություններով:

«ՀԻՒՄԻՍ», ազգ., քաղ., կրթ., գեղ. շաբաթաթերթ (1863–64, Ս. Պետերբուրգ): Հրտ–խմբ.՝ Ռափայել *Պատկանյան*:

«ՀԻՒՄԻՍՄԱՓԱՅԼ», ազգ., մշակութ., լուսավոր., կրթադաստիարակչ. ամսագիր (1858–62, 1864, Մոսկվա): Խմբ.՝ Ստեփանոս *Նազարյան*:

ՀԻՔՍ (Hicks) Ջոն Ռիչարդ (1904–1989), անգլիացի տնտեսագետ: Նորքեյնսականության ներկայացուցիչներից: Աշխ–ները վերաբերում են տնտ. ածի մոդելավորմանը, պահանջարկի տեսությանն ու գներին:

Նոբելյան մրց. (1972, Ք. *Էռոուի* հետ):

ՀԻՔՍՈՍՆԵՐ [լգիպտ.՝ «օտար թագավորներ» («հովիվների կառավարիչներ»)], ասիական քոչվոր ցեղեր, որոնք մ. թ. ա. մոտ 1700–ին նվաճել են Եգիպտոսը: Հաստատվելով Նեղոսի Դելտայի շրջանում՝ այնտեղ հիմնադրել են իրենց մայրաքաղաքը՝ Ավարիսը: Մ. թ. ա. XVI դ–ում կորցրել են իրենց գերիշխանությունը:

ՀԻՖԵՐ (հուն.՝ hyphe – հյուսվածք, ոստայն), մանրադիտակային նուրբ, պարզ կամ ճյուղավորվող թելեր, որոնցից ձևավորվում են սնկերի վեգետատիվ մարմինը (սնկամարմինը) և պտղամարմինը:

ՀԼԱԴՆԻ (Chladni), **Խլադնի**, Էռնստ Ֆլորենս Ֆրիդրիխ (1756–1827), գերմանացի ֆիզիկոս, երաժիշտ, փորձարար. ձայնագիտ–յան հիմնադիրը: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. անդամ (1794): Հետազոտել է տարբեր մարմինների տատանումների ձևերը: Նկարագրել է իր անվամբ կոչված պատկերները: Նշել է երկնաքարերի տիեզ. ծագումը:

ՀԼԱԾՈՒԿ, կնձմնձուկ (Barbarea), կաղամբազգիների ընտանիքի կաղամբ ցեղի երկամյա և բազմամյա խոտաբույսեր: Հայտնի է 20 տեսակ՝ Հս. կիսագնդի բարեխառն գոտում, ՀՀ–ում՝ 5, առավել տարածված է սովոր. Հ.: Մոլախոտ է, աղբոտում է երեքնուկի, հազվադեպ՝ աշնանացան հացաբույսերի ցանքերը, այգիները, հատապտղուտները: Աճում է նաև մարգագետիններում, ջրամբարների և գետերի ափերին:

ՀՀ ԳԱԱ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԳԳ), ստեղծվել է 1935–ին՝ ԽՍՀՄ ԳԱ Հայաստանի մասնաճյուղին (ԱրմՖԱՆ) կից: Նախապես կոչվել է Կենտր. գրադարան, 1943–ից ՀՀ ԳԱԱ նախագահության ենթակայության ինքնուրույն ակադեմ. հաստատություն է: ՀԳԳ շուրջ 3 մլն գրադարան. միավորով (856 հզ–ը օտարալեզու) ՀՀ գիտ. խոշոր գրադարանն է, ղեկավարում և համակարգում է ԳԱԱ համակարգի գիտ. հիմնարկների 29 ճյուղային մասնագիտ. գրադարանների (շուրջ 1,2 մլն գրադարան. միավոր) գործունեությունը: Տնօրեններ՝ Վաչե Կարմենյան, Արարատ Ղարիբյան, Գուրգեն Հովնան, Վաչե Նալբանդյան, Հանրի Ներսեսյան, Տիգրան Զարգարյան, Կարապետ Մինասյան (2011–ից):

«ՀՀ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ», կիսամսյա պարբ. (1997–ից, Երևան): ՀՀ արդարադատության նախ–յան հրտ–յուն:

«ՀՀ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ», շաբաթ. պարբ. (1997–ից, Երևան): ՀՀ արդարադատության նախ–յան հրտ–յուն: Խմբ.՝ Սուսաննա Գրիգորյան:

ՀԱԼԻՈՒԹՅՈՒՆ, ֆիզիոլոգ. կենսընթաց, երբ կնոջ և կենդանածին կենդանիների էգի օրգանիզմներում բեղմնավորված ձվաբջջից զարգանում է պտուղը և ավարտվում ծնունդով: Կանանց Հ. տևում է միջինը՝ 10 լուսնային ամիս (40 շաբաթ կամ 280 օր): Բեղմնավորումը սովորաբար տեղի է ունենում արգանդափողի լայնանքում: Արգանդափողով տեղաշարժվելու ժամանակ ձվաբջիջը փոխակերպվում է բազմաբջիջ սաղմի (պտղաձու), որը պատված է նուրբ խիտ թավիկներով: Վերջինների օգնությամբ սաղմը պատվաստվում է արգանդի լորձաթաղանթին, որտեղ թավիկներն ինտենսիվորեն աճելով գոյացնում են ***ընկերքը***, որը պտղին միանում է ***պորտալարով***:

ՀՂԿԱՆՅՈՒԹԵՐ, հոծ կամ մանրացված նյութի տեխ. մշակման (հղկում, կտրում, տրորում, փայլեցում) համար օգտագործվող բարձր կարծրության նյութեր: Բնական Հ. են կայծքարը, զմռնիտը, կորունդը, նռնաքարը, ալմաստը ևն: Արհեստ. Հ. են էլեկտրակորունդը, կայծքարի կարբիդը, բորազոնը, էլբորը, սինթետիկ ալմաստը ևն: Օգտագործում են հղկանյութային գործիքների պատրաստման համար:

ՀՂԿՈՒՄ, հղկանյութային գործիքներով նախապատրաստուկների մակերևույթների մաքրամշակում: Կան հղկման 2 հիմն. եղանակներ՝ **կապված հղկահատիկներով** (դրանք ամրացնում են կարծր կամ ճկուն հիմքի վրա՝ հղկաքար, հղկաժապավեն) և **ազատ հղկահատիկներով** (դրանք ուղղում են մշակվող մակերևույթի վրա՝ օդի, հեղուկի շիթի, մագնիս. դաշտի ազդեցությամբ կամ մածուկի ձևով): Հ. հիմնականում կիրառվում է մեքենաշինության, փայտամշակման և քարամշակման արդ–յան մեջ:

ՀՄԱՅԻԼ, 1. կիսալուսնաձև, ուղղանկյուն կախիչով, մանր եռանկյուններով երիզված, կենտրոնում 2 շրջանակի մեջ մեկական ութաթև վարդյակներ. կախվել է եզան վզից կամ տան դռներից՝ չար աչքից պաշտպանելու համար: 2. Աղոթքների ժող., աղոթքները տպագրվել են առանձին թղթերի վրա, ապա կցվել իրար: Հ–ներն ունեն մի քանի մետր երկ., առանց անվանաթերթի և կազմի են: Հայ. հնատիպ գրքի շրջանում Հ–ներ տպագրվել են 1698, 1717, 1726–ին, մեր օրերում՝ 1992–ին Երևանում:

ՀՄԱՅՈՒԹՅՈՒՆ, կախարդություն, մարդկանց, կենդ. ու բուս. աշխարհների, բնության երևույթների, երևակայական ոգիների ու աստվածների վրա գերբնականորեն ազդելու հավատի հետ կապված արարողությունների ամբողջություն: Հ–յան ծեսեր տարածված են աշխարհի բոլոր ժողց–ների մեջ (օր.՝ ծիս. լվացումներ, սրբազան յուղերով օծումներ, թալիսմաններ ևն): Տես նաև ***Նախապաշարմունք***:

ՀՅԱՐՄ (Härm) Տիյտ (ծ. 1946), բալետի էստոնացի արտիստ, բալետմայստեր: Էստ. ԽՍՀ ժող. արտիստ (1976): 1966–90–ին (ընդմիջումներով)՝ «Էստոնիա» թատրոնի (1990–ից՝ տնօրեն), 1967–70–ին՝ «Երիտասարդ բալետ»–ի մենապարող (Զիգֆրիդ՝ Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճը», Ալբերտ՝ Ա. Ադանի «Ժիզել», Մանդարին՝ Բ. Բարտոկի «Հրաշալի մանդարին», ևն): 1990–ից՝ «Էստոնիա» թատրոնի բալետի դիրիժոր:

ՀՅՈԼԴԵՌԼԻՆ (Hölderlin) Յոհան Քրիստիան Ֆրիդրիխ (1770–1843), գերմանացի բանաստեղծ: Հեղինակ է բանաստեղծությունների, հիմների («Մարդկության իդեալներին ձոնված հիմներ», 1790–97), «Հիպերիոն կամ Ճգնավորը Հունաստանում» (1797–99) քնար. վեպի, «Էմպեդոկլեսի մահը» (1798–1800) ողբերգության և այլ գործերի: Հայ. հրատարակվել է Հ–ի «Բանաստեղծություններ» (2002) ժող–ը:

ՀՅՈՅԶԻՆԳԱ (Huizinga) Յոհան (1872–1945), նիդեռլանդացի պատմաբան և իդեալիստ–փիլ.: Աշխ–ները վերաբերում են միջնադար. մշակույթի պատմությանը և Վերածննդին («Միջնադարի աշուն» ևն): Մշակույթի հիմքում դրել է խաղը՝ որպես մարդկային էության բարձրագույն արտահայտություն (“Homo ludens”):

ՀՅՈՐՏՈԳԵՆԲՈՍ (Hertogenbosch), ք–հա–մայնք Նիդեռլանդներում, Հս. Բրաբանտ նահգ–ի վարչ. կենտրոնը, նվինգստ՝ Զեյդ–Վիլեմսվարտ ջրանցքի ափին: Բն.՝ 169 հզ. (արվարձաններով՝ 198 հզ., 2011):

ՀՅՈՖԴԻՆԳ (Höffding) Հարալդ (1843–1931), դանիացի փիլ. և աստվածաբան, Նոր ժամանակների փիլ–յան պատմաբան: Ֆիզիկոս Ն. Բորի փիլ–յան դասատուն: Փորձել է համատեղել էմպիրիզմը Ի. Կանտի գաղափարների հետ:

ՀՅՈՒԲԵԼ (Hubel) Դեվիդ Հանտեր (1926–2013), կանադացի նեյրոֆիզիոլոգ: 1954–ից՝ ԱՄՆ–ում: Աշխ–ները վերաբերում են տեսողության նեյրոֆիզիոլոգիային: Տ. Ն. *Վիզելի* հետ բացահայտել է գլխուղեղի՝ արտաքին ազդակներն ընկալող նեյրոնային կառուցվածքներում տեղեկույթի վերամշակման սկզբունքները:

Նոբելյան մրց. (1981, Տ. Ն. Վիզելի և Ռ. *Սպերրիի* հետ):

ՀՅՈՒԲՆԵՐ (Hubner) Կուրտ (1921–2013), գերմանացի փիլ.: Ուսումնասիրել է հոգևոր կյանքի և մշակույթի տարբեր ձևերի յուրահատուկ բնույթը: Հեղինակ է «Գիտական բանականության քննադատություն» (1978), «Առասպելի ճշմարտությունը» (1985), «Հավատ և բանականություն» (2001), «Քրիստոնեությունը համաշխարհային կրոնների բանավեճում» (2003) և այլ աշխ–ների:

ՀՅՈՒԲՇՄԱՆ (Hübschmann) Հայնրիխ (Յոհան Հայնրիխ, 1848–1908), գերմանացի լեզվաբան, հայագետ, իրանագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1872): Երիտքերական. դպրոցի ներկայացուցիչ: Հեղինակ է «Հայագիտական ուսումնասիրություններ» (1883), «Հայերենի քերականություն» (մաս 1, 2, 1895, 1897), «Հայերենի հնչյունական օրենքների ժամանակագրության մասին» (1898), «Հին հայոց տեղւոյ անունները...» (1904, հայ.՝ 1907) և այլ հայագիտ. աշխ–ների: Հ. «Հայերենի տեղը հնդեվրոպական լեզուների մեջ» (1875) հոդվածում հայ–ը համարել է հնդեվրոպ. լեզուների ինքնուրույն ճյուղ: Աշխ–ներում անդրադարձել է նաև հուն–ին, լատ–ին, գոթերենին, սանսկրիտին, նոր պարսկ–ի քերակ–յանը, մեկնել Ավեստայի լեզուն: Հեղինակ է նաև «Զրադաշտական մի երգ» (1872) ուսումնասիրության:

ՀՅՈՒԳԵՆՍ, Հույգենս (Huygens), Քրիստիան (1629–1695), նիդեռլանդացի մեխանիկոս, մաթեմատիկոս: Լոնդոնի թագավոր. ընկ–յան առաջին օտարերկրյա անդամը (1668) և Փարիզի ԳԱ հիմնադիր անդամներից (1666): Ստեղծել է (1678, հրտ.՝ 1690) լույսի ալիք. տեսությունը, բացատրել *լույսի երկբեկումը*: Հայտնագործել է (1657) գործարկման մեխանիզմով առաջին ճոճանակավոր ժամացույցը, բացահայտել ֆիզ. ճոճանակի տատանման օրենքները, մշակել հարվածի տեսության հիմունքները: Ռ. *Հուկի* հետ գտել է ջերմաչափի հաստատուն կետերը (սառույցի հալման և ջրի եռման), կատարելագործել աստղադիտակը: Հայտնագործել է (1655) *Սատուռնի Տիտան* արբանյակը և որոշել նրա պտույտի պարբերությունը, բացահայտել Սատուռնի օղակը: Մշակել է լույսի ալիքների տարածման վերաբերյալ խնդիրների լուծման մոտավոր մեթոդ (տես *Հյուգենս–Ֆրենելի սկզբունք*): Կառուցել է օկուլյար, որ ցայսօր օգտագործվում է (Հյուգենսի օկուլյար):

ՀՅՈՒԳԵՆՍ–ՖՐԵՆԵԼԻ ՍԿԶԲՈՒՆՔ, համաձայն որի՝ ալիք. գրգռումը որևէ P կետում կարելի է դիտել իբրև ալիք. որևէ մակերևույթի յուրաքանչյուր տարրից առաքված երկրորդ. ալիքների *ինտերֆերենցիայի* արդյունք: Հ–Ֆ. ս. հնարավորություն է տալիս որոշ մոտավորությամբ դիտարկելու ալիքների դիֆրակցիայի բազմաթիվ դեպքեր: Առաջինը մշակել է Ք. *Հյուգենսը*, լրացրել և ընդարձակել է Օ. *Ֆրենելը:*

ՀՅՈՒԳՈ (Hugo) Վիկտոր Մարի (1802–1885), ֆրանսիացի գրող: Ֆրանս. ռոմանտիզմի առաջնորդն ու տեսաբանը: Հ–ի «Կրոմվել» (1827) դրամայի համար գրած նախաբանը դարձել է ֆրանս. ռոմանտիկների գեղագիտ. հռչակագիրը: Հեղինակ է «Արևելյան մոտիվներ» (1829), «Աշնանային տերևներ» (1831), «Մթնշաղի երգեր» (1835), «Ահեղ տարի» (1872) և այլ բանաստեղծությունների ժող–ների, «Էռնանի» (1829, հայ.՝ 1908. Ջ. Վերդիի համանուն օպերան), «Մարիոն դը Լորմ» (1829), «Արքան զվարճանում է» (1832, հայ.՝ 1888), «Մարիա Թյուդոր» (1833), «Ռուի Բլաս» (1838, հայ.՝ 1873) դրամաների, «Փարիզի Աստվածամոր տաճարը» (1831, հայ.՝ 1869) պատմավեպի, ֆրանս. հաս–յան տարբեր խավերի տառապալի կյանքը պատկերող «Թշվառները» (1862, հայ.՝ մաս 1–5, 1868–70), «Ծովի աշխատավորները» (1866), «Մարդը, որը ծիծաղում է» (1869), «Իննսուներքը» (1874, հայ.՝ 1910՝ «Եղբայրը եղբոր դեմ») վեպերի: Նապոլեոն III–ի կայսր հռչակվելուց հետո (1852) հարկադրված փոխադրվել է Բրյուսել, այնուհետև՝ Լա Մանշ նեղուցի կղզիներ: Հայրենիք է վերադարձել 1870–ին: Վտարանդիության տարիներին գրել է «Մի հանցագործության պատմություն» (հ. 1–2, 1877–78) գիրքը և «Փոքր Նապոլեոն» (1852) պամֆլետը, «Հատուցում» (1853) քաղ. թեմաներով բանաստեղծությունների, «Դարերի առասպելը» (հ. 1–3, 1859–83) պատմ. ավանդությունների և լեգենդների ժող–ները: Հայ. հրատարակվել են նաև «Լուկրեցիա Բորջա» (1862), «Անջելո» (1863), «Արդար ծերունի» (1900), «Հոպիտը» (1924) և այլ գործեր:

ՀՅՈՒԵ, Հուե (Hue), ք. Վիետնամի կենտր. մասում, Բինչիտիեն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 305,7 հզ. (2010): Տրանսպորտ. հանգույց է: Հիմնադրվել է մ. թ. ա. III դ–ում: XIX դ–ում եղել է Վիետնամի մայրաքաղաքը, 1884–1945–ին՝ աննամյան կայսրերի նստավայրը: Կայսեր. շինությունների համալիրը (XIX դ–ի ճարտ. հուշարձանով) ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ–ի համաշխ. ժառանգության ցանկում:

ՀՅՈՒՋ (Hughes) Դեվիդ Էդուարդ (1831–1900), անգլիացի ֆիզիկոս և գյուտարար: Լոնդոնի թագավոր. ընկ–յան անդամ (1880): 1855–ին արտոնագրել է իր ստեղծած տառատպիչ հեռագր. ապարատը, որն օգտագործվել է ԱՄՆ–ում, հետագայում՝ նաև Եվրոպայում: Հ. նաև ածխային միկրոֆոնի (1878), ինդուկտիվ կշեռքի (1879), ձայնաչափի (1879) գյուտարարն է: Լոնդոնի թագավոր. ընկ–ը Հ–ի պատվին սահմանել է Հյուզի անվ. մեդալ (1902–ից):

ՀՅՈՒՋ Թեդ (1930–1998), անգլիացի բանաստեղծ: Զարգացնելով Դ. *Թոմասի* ավանդությունները՝ բարեփոխել է անգլ. բնափիլ. և անիմալիստ. քնարերգությունը («Բվեճն անձրևի տակ», 1957, և այլ ժող–ներ), ներկայացրել ժամանակակից քաղաքակրթության այլաբան. պատկերը («Ագռավ», 1970, «Քարանձավի թռչուններ», 1978, ժող–ներ): Հեղինակ է նաև «Նամակներ ծննդյան տարեդարձի կապակցությամբ» (1998) ինքնակենսագր. չափածո երկերի ժող–ի:

ՀՅՈՒՋ Լենգսթոն (1902–1967), ամերիկացի գրող, հրապարակախոս: Քնարերգությունը հենված է նեգր. հոգևոր երաժշտության ավանդույթների վրա: Հեղինակ է «Հոգնած բլյուզներ» (1926), «Բանաստեղծությունների ընտրանի» (1959) ժող–ների, «Ծիծաղ՝ արցունքների միջից» (1930) վեպի, «Լավագույն պատմություններ Սիմփլի մասին» (1961) արձակ գործերի, «Հովազն ու մտրակը» (1967) հրապարակախոս. բանաստեղծությունների ժող–ների, «Սկոտտսբորո» (1932, հայ.՝ 1932) և այլ չափածո պիեսների:

ՀՅՈՒՋ Ուիլյամ Մորիս (1862–1952), Ավստրալիայի վարչապետ՝ 1915–23–ին: 1917–ին Էյբորիստ. կուս–յան (հիմն.՝ 1891) աջ թևը Հ–ի գլխավորությամբ միացել է լիբերալներին՝ ձևավորելով Ազգ. կուս–յունը: 1945–ից՝ վերակազմավորված Լիբերալ կուս–յան առաջնորդներից: Ավստրալիայի անունից ստորագրել է Վերսալի խաղաղության պայմանագիրը:

ՀՅՈՒԻՇ (Hewish) Էնթոնի (ծ. 1924), անգլիացի աստղագետ: Լոնդոնի թագավոր. ընկ–յան անդամ (1965): Ուսումնասիրել է փոքր անկյուն. չափերի ռադիոաղբյուրների սցինտիլյացիան (կայծկլտումը) և այդ երևույթն օգտագործել *արևապատկի* արտաքին շերտերի հետազոտման համար: 1967–ին աշխատակիցների հետ հայտնագործել է *պուլսարները*:

Նոբելյան մրց. (1974, Մ. *Ռայլի* հետ):

ՀՅՈՒԻՄՄԱՆՍ (Huysmans) Ժորիս (Յորիս) Կառլ (Ժորժ Շառլ, 1848–1907), ֆրանսիացի գրող: Հ–ի «Մարթա: Մի պոռնիկի պատմություն» (1876) վիպակին, «Վաթար քույրերը» (1879) վեպին բնորոշ են նատուրալիստ. միտումները, «Հակառակը» (1884) և «Այնտեղ՝ ներքևում» (1891) վեպերին՝ անկումային գրկ–յան տարրերը, «Ճանապարհին» (1895), «Կաթողիկե եկեղեցին» (1898) վեպերն առանձնանում են ռեալիստ. մեկնաբանություններով:

ՀՅՈՒԻՄՄԱՆՍ Կամիլ (1871–1968), բելգիացի սոցիալիստ, Բելգիայի աշխատավոր. կուս–յան ղեկ–ներից: 1905–22–ին՝ 2–րդ ինտերնացիոնալի միջազգ. սոց. բյուրոյի քարտուղար: 1936–39 և 1954–58–ին՝ Ներկայացուցիչների պալատի նախագահ: 1946–47–ին՝ վարչապետ, 1947–49–ին՝ լուսավորության նախարար:

ՀՅՈՒԾԱԽՏ, ծյուրախտ, օրգանիզմի արագընթաց հյուծումը քրոնիկ. հիվանդությունների, գլխավորապես՝ թոքերի տուբերկուլոզի (թոքախտ) դեպքում:

ՀՅՈՒԾԱՆՔ, կախեքսիա, օրգանիզմի հիվանդագին վիճակ. բնորոշվում է խորը հյուծվածությամբ և ֆիզ. թուլությամբ: Ախտանշանները. խիստ նիհարում, քաշի կորուստ, մաշկի չորություն, մազաթափություն, մկանների և ներքին օրգանների ապաճում ևն:

ՀՅՈՒԿԿԵԼ (Hückel) Էրիխ (1896–1980), գերմանացի քիմիկոս և ֆիզիկոս: Աշխ–ները վերաբերում են մոլ–ի կառուցվածքի ուսումնասիրման քվանտաքիմ. եղանակներին: Մշակել է (1923, Պ. *Դեբայի* հետ) ուժեղ էլեկտրոլիտների տեսությունը:

ՀՅՈՒՄ Դեվիդ (1711–1776), շոտլանդացի փիլ., պատմաբան, տնտեսագետ: «Տրակտատ մարդկային բնության մասին» (հ. 1–3, 1739) աշխ–յան մեջ զարգացրել է զգայական փորձի՝ որպես գիտելիքի միակ

աղբյուրի մասին ուսմունքը: Գիտակցության բովանդակությունը հանգեցրել է «տպավորություններին» և «զուգորդություններին», այդ թվում՝ սուբստանցի և պատճառականության գաղափարները, որոնք իրադարձությունների ժամանակային հաղորդականության սոսկ սովորական սպասումներ են: Հ. բարոյագիտ-յան մեջ զարգացրել է ուտիլիտարիզմի հայեցակարգը, քաղ-տնտ-յան մեջ կողմնակից էր Ա. *Սմիթի*՝ արժեքի աշխ. տեսությանը: Հ-ի ուսմունքը հետագայում դարձել է Ի. Կանտի, նաև պոզիտիվիզմի և նորպոզիտիվիզմի փիլ-յան գաղ. հիմքը:

ՀՅՈՒՆՔՅԱՐՊԵՅԵՆՑՅԱՆ Հովհաննես (Պետրոս, 1818–1894), բառարանագիր, լեզվաբան: 1852-ից՝ քհն.: Հեղինակ է «Ստուգաբանական բառարան հայ լեզուի» (1894) աշխ-յան (Հ-ի ստուգաբանությունները չունեն գիտ. հիմնավորում): Մասնակցել է Աստվածաշնչի խմբագրման աշխ-ներին, համեմատել հայ. թարգմանությունը և հունա. բնագիրը:

ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ, հյուպատոս. հիմնարկին և նրա աշխատողներին տրվող արտոնությունների և առավելությունների ամբողջությունը: Հ. ա-յան ծավալը սահմանվում է պետությունների ներքին օրենսդրությամբ, միջազգ. բազմակողմ համաձայնագրերով (Հյուպատոս. հարաբերությունների մասին Վիեննայի համաձայնագիր 1963) կամ երկկողմ հյուպատոս. համաձայնագրերով ու միջազգ. սովորույթներով:

ՀՅՈՒՍԱԶԱՐԴ, **ֆիլիգրան** (իտալ.՝ filigrana, < հուն. filum – լար և granum – հատիկ), 1. ոսկերչ. տեխնիկայի տեսակ: 2. Ոսկու, արծաթի, պղնձի նուրբ մետաղալարերով հյուսածո մոտիվներով պատրաստված նախշեր, որոնք առանձին կամ միասին ձուլված են մետաղի հարթության վրա: Հայտնի էր Հին Արևելքի երկրներում, Հին Հունաստանում, Հին Հռոմում, որտեղից տարածվել է այլ երկրներ (նաև Հայաստան): 3. Գրքի կազմի մետաղազարդ վրադիր:

ՀՅՈՒՍԱԿԱԲՈՐԲ, **պլեքսիտ** (լատ.՝ plexus – հյուսակ), պարանոցային, բազկային, գոտկասրբոսկրային նյարդ. հյուսակների բորբոք. հիվանդություն՝ կապված վնասվածքների, վարակիչ հիվանդությունների, ուռուցքների ևևի հետ: Դրսևորվում է ցավերով, ռեֆլեքսների իջեցմամբ, զգացողության խանգարումներով:

ՀՅՈՒՍԹՈՆ (Huston) Ջոն (1906–1987), ամերիկացի կինոռեժ., սցենարիստ, դերասան: Ֆիլմերի հիմքում հերոսի՝ չարաչար փորձություններին դիմակայելն է («Մալթայի բազեն», 1941, «Միեռա Մադրեի գանձը», 1948, «Մուլեն Ռուժ», 1953, «Մոբի Դիք», 1956, «Անհանգիստները», 1960, «Պրիցցի ընտանիքի պատիվը», 1985, ևն):

ՀՅՈՒՍԹՈՆ, ք. ԱՄՆ Տեխաս նահց-ում: Բն.՝ 2,3 մլն (արվարձաններով՝ 5,8 մլն, 2010): ԱՄՆ խոշորագույն ծով. նավահանգիստներից է (բեռնաշրջանառությունը՝ ավելի քան 200 մլն *տ*, որի կեսը բեռնարկղ. բեռներ են), նավարկելի ջրանցքներով միացած է Մեքսիկ. ծոցի և Գալվեստոնի նախանավինգստ-ի հետ: Ունի օդանավակայաններ: Գործում են Օդագնացության և տիեզ. տարածության հետազոտությունների ազգ. գործակալության (ՆԱՍԱ) տիեզ. թռիչքների կառավարման կենտրոնը, աշխարհում խոշորագույն բժշկ. կենտրոններից մեկը (տարեկան՝ ավելի քան 5 մլն հաճախորդ), բազմաթիվ բուհեր, թանգարաններ, թատրոններ: Զարգացած է զբոսաշրջությունը (տարեկան՝ ավելի քան 7 մլն):

ՀՅՈՒՍԻՍԱԼԻԶՈՒՐՅԱՆ ԼԵՌՆԱՇՂԹԱ, **Բազարդարա**, Պամիրում: Երկ.՝ շուրջ 130 *կմ*, բարձր.՝ մինչև 5929 *մ*: Կան սառցադաշտեր:

ՀՅՈՒՍԻՍԱՄԵՐԻԿՅԱՆ ԳՈԳՀՈՎԻՏ, իջվածք Ատլանտ. օվկ-ի հս-արմ-ում՝ Հս. Ամերիկայի ափերի մոտ: Տիրապետող խոր.՝ ավելի քան 5000 *մ*, հվ-արմ-ում է Պուերտո Ռիկոյի փողրակը (խոր.՝ մինչև 8742 *մ*):

ՀՅՈՒՍԻՍԱՄԵՐԻԿՅԱՆ (ԿԱՆԱԴԱԿԱՆ) ՊԼԱՏՖՈՐՄ, մինչքեմբրյան պլատֆորմ. զբաղեցնում է Հս. Ամերիկայի մեծ մասն ու Գրենլանդիա կղզին: Հիմքը մերկանում է Կանադ. վահանի սահմաններում՝ պլատֆորմի կենտր. և հս-արլ. մասերում:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ, մայրցամաք Արմ. կիսագնդում: Հվ-ում Պանամայի պարանոցով միանում է Հվ. Ամերիկային: Հ. Ա-ին են պատկանում Կենտր. Ամերիկան և Վեստ Ինդիան: Տարածքը (առանց կղզիների)՝ 20,36 մլն *կմ*^{2}, կղզիներով՝ 24,25 մլն *կմ*^{2}: Բն.՝ 565,3 մլն (2013): Ափերը ողողում են Հս. սառուցյալ (Բոֆորտի, Բաֆինյայի ծովեր, Գրենլանդիայի և Հուդզոնի ծոցեր), Ատլանտ. (Լաբրադոր և Կարիբյան ծովեր, Սբ Լավրենտինի և Մեքսիկ. ծոցեր), Խաղաղ (Բերինգի ծով, Ալյասկայի և Կալիֆոռնիայի ծոցեր) օվկ-ները: Խոշոր կղզիներն են Գրենլանդիան, Կանադ. Արկտիկ. և Ալեքսանդրի կղզեխմբերը, Վեստ Ինդիան, Ալեության և Շաղոտա թագուհու կղզիները, Վանկուվերը, կղզիները՝ Բութիան, Մելվիլը, Լաբրադորը, Ֆլորիդան, Յուկատանը, Կալիֆոռնիան, Ալյասկան, Այուարդը ևն: Արմ. մասն զբաղեցնում են Կորդիլիերները (Մակ-Քինլի, 6194 *մ*), արլ. մասը՝ ընդարձակ հարթավայրերը, սարահարթերը և ոչ բարձր լեռները: Հս-ում և հս-արլ-ում Լավրենտյան բարձրությունն է, որից հվ տարածվում են Կենտր. և Մեծ հարթավայրերը, իսկ մայրցամաքի հվ-արլ-ում՝ Մերձատլանտ. և Մեքսիկ. դաշտավայրերը: Հ. Ա-ի մեծ մասն զբաղեցնում է Հս-ամերիկ. մինչքեմբրյան պլատֆորմը: Կան երկաթի, սուլֆիդների, պղնձի, նիկելի, ուրանի, ոսկու, քարածխի, արծաթի, ցինկի, վոլֆրամի, սնդիկի, նավթի և գազի հանքավայրեր: Կլիման բազմազան է՝ արկտիականից՝ մերձհասարակած.: Արևադարձ. գոտուն բնորոշ են Ազորյան և Հավայան մաքսիմումները: Հունվ-ի միջին ջերմաստիճանը –36°C-ից (Կանադ. Արկտիկ. կղզեխումբ) –20°C է (Ֆլորիդայի և Մեքսիկ. բարձրավանդակի հվ): Ամենախոշոր գետ. համակարգը Միսսիսիպի-Միսսուրին է: Կարևոր գետերից են Յուկոնը, Ֆրեյզերը, Կոլումբիան, Մակենզին, Սասկաչևան-Նելսոնը, Սբ Լավրենտիոսը: Հ. Ա-ում են Մեծ լճերը (Վերին, Միչիգան, Հուրոն ևն), Մեծ Արջի, Մեծ ստրկական, Մանիթոբա և այլ լճեր: Մայրցամաքի մեծ մասը հոլարկտիկ բուսաաշխարհագր. մարզի սահմաններում է: Հ. Ա-ում են ԱՄՆ, Անտիգուան Բարբուդա, Բահամներ, Բարբադոս, Բելիզ, Գվատեմալա, Գրենադա, Դոմինիկա, Դոմինիկյան Հանրապետություն, Կանադա, Կոստա Ռիկա, Կուբա, Հայիթի, Հոնդուրաս, Ճամայկա, Մեքսիկա, Նիկարագուա, Պանամա, Սալվադոր, Սենտ Լյուսիա, Սենտ Վինսենտ և Գրենադիններ, Տրինիդադ և Տոբագո պետությունները: Կախյալ տարածքներից են Վիրջինյան կղզիները (ԱՄՆ), Անգիլիա, Բերմուդյան, Բրիտ. Վիրջինյան կղզիները (Մեծ Բրիտանիա), Բոնեյր, Արուբա, Սինտ Էստատիուս և Սաբո (Նիդեռլանդներ), Գվադելուպա (Ֆրանսիա), Գրենլանդիա (Դանիա) ևն:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՇԱՎԱՆՔ 1926–27, Չինաստանի 1925–27-ի հեղ-յան ընթացքում Գուանդուն պրովինցիայից Ազգհեղ. բանակի արշավանքը հս՝ բեյանական ռազմ. խմբավորման դեմ:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԲԵՎԵՌ, Երկրի պտտման երևակայական առանցքի և Երկրի մակերևույթի հատման կետը Հս. կիսագնդում: Հ. բ-ի նկատմամբ Երկրի մակերևույթի բոլոր կետերը հվ-ում են: Հ. բ. Հս. սառուցյալ օվկ-ի կենտր. մասում է, որտեղ օվկ-ի խոր. 4000 *մ* է և ավելի: Հ. բ. առաջինը հասել է ամերիկացի Ռ. *Պիրին* (1909-ի ապրիլի 6-ին):

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԴԱԿՈՏԱ, նահգ ԱՄՆ-ի հս-ում: Տարածքը՝ 183,3 հզ. *կմ*^{2}, բն.՝ 723,4 հզ. (2013): Վարչ. կենտրոնը՝ Բիսմարկ:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԴԵՎԻՆԱ, գետ ՌԴ եվրոպ. մասի հս-ում: Երկ.՝ 744 *կմ*, ավազանը՝ 357 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 3490 *մ*^{3}/*վ*: Կազմվում է Սուխոնա և Յուգ գետերի միախառնումից, թափվում է Սպիտակ ծովի Դվինայի խորշը: Սուխոնա գետով, Կուբենսկոյե լճով, Շեկսնա գետով միացած է Վոլգային:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՂՋԵՐՈՒՆ, եղջերուների ընտանիքի երկկճղակավոր կենդանի: Երկ.՝ մինչև 2,2, մնդավի բարձր.՝ մինչև 1,4 *մ*, կ. զ.՝ մինչև 220 *կգ*: Ունի երկեղջյուրներ: Տարածված է բևեռ. կղզիներում, Եվրասիայի և Հս. Ամերիկայի տունդրայում ու տայգայում: Ռուսաստանում բազմաքանակ է Թայմիր թ-կղզում: Կատարում է սեզոն. միգրացիաներ՝ բազմաքանակ հոտերով: Նորերկրային ենթատեսակը պահպանվում է: Վայրի Հ. ե. ընտանիի նախահայրն է:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՐԿԻՐ (մինչև 1926-ը՝ Կայսր Նիկոլայ II-ի երկիր), կղզեխումբ Կարայի և Լապտևների ծովերի սահմանագծին՝ Թայմիր թ-կղզուց հս (ՌԴ): Տարածքը՝ մոտ 37,6 հզ. *կմ*^{2}: Բաղկացած է 4 մեծ (Հոկտ. հեղ-յան, Բոլշևիկ, Կոմսոմոլեց, Պիոներ) և բազմաթիվ փոքր կղզիներից: Հ. ե-ում է Ասիայի ամենահս. կղզային կետը՝ Արկտիկ. հրվանդանը: Տարածքի մոտ կեսը ծածկված է մինչև 965 *մ* բարձր-յան սառցադաշտով: Տարածված է մամոնաբարաքոս. տունդրան: Հայտնագործել է Բ. Ա. *Վիլկիցկու* արշավախումբը 1913-ին:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԹԱԳ (լատ.՝ Corona Borealis), համաստեղություն երկնքի Հս. կիսագնդում՝ Օձ, Եզնարած, Հերակլես համաստեղությունների միջև: Ամենապայծառ աստղը՝ *Գեմման*, 2-րդ ա. մ. է: Հս. միջին լայն-ներից երևում է ամբողջ տարին:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱ, **Օլսթեր**, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորության և Հս. Իռլանդիայի վարչաքաղ. մասը: Զբաղեցնում է Իռլանդիա կղզու հս-արլ. հատվածը: Տարածքը՝ 14,1 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,9 մլն (2011): Օրենսդիր մարմինը Հս. Իռլանդիայի Ասամբլեան է, գործադիր մարմինը՝ Գործադիր կոմիտեն: Վարչականորեն բաժանված է 6 կոմսության և 26

շրջանի: Գլխ. քաղաքը՝ *Բելֆաստ*: 1921-ի Անգլո-իռլանդ. պայմանագրով Հ. Ի. Մեծ Բրիտանիայի կազմում է:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԾՈՎ, Ատլանտ. օվկ-ի ծայրամաս. ծով Եվրոպայի ափերի մոտ՝ Սկանդինավյան և Յուտլանդիա թ-կղզիների (արլ-ում) և Մեծ Բրիտանիա, Օրկենյան ու Շոտլանդ. կղզիների (արմ-ում) միջև: Ողողում է Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Բելգիայի, Նիդեռլանդների, Գերմանիայի, Դանիայի, Նորվեգիայի և Շվեդիայի ափերը: Մակերեսը՝ 565 հզ. *կմ*², խոր.՝ մինչև 725 *մ*: Ծովի 2/3-ից ավելին ունի 100 *մ*-ից պակաս խորություն, հվ-ում կան ծանծաղուտներ (Դոգեր Բանկ ևն): Հ. ծ. են թափվում Էլբա, Վեզեր, Հռենոս, Թեմզա գետերը: Գլխ. նվինգստ-ները՝ Ռոտերդամ, Ամստերդամ, Անտվերպեն, Լոնդոն, Հուլ, Համբուրգ, Բրեմեն, Վիլհելմսհաֆեն, Գյոթեբորգ, Օսլո, Բերգեն:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԾՈՎԱՅԻՆ ՈՒՂԻ, Ռուսաստանի գլխ. նավարկելի մայրուղին Արկտիկայում: Անցնում է Հս. սառուցյալ օվկ-ի ծովերով, կապում բնական պաշարներով հարուստ Սիբիրի հս. և արլ. մասերը եվրոպ. արդ. շրջանների հետ: Երկ-ը մոտ կիսով չափ կարճ է (14 280 *կմ*) Ս. Պետերբուրգից Սուեզի ջրանցքով վայրիվոստոկ տանող ծով. ուղուց (23 200 *կմ*): Բնորոշ են Արկտիկայի խիստ կլիմ. պայմանները: Նավարկությանը հիմնականում խանգարում է արկտիկ. սառույցը:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿԱՐՈԼԻՆԱ, Նահ ԱՄՆ-ի հվ-արլ-ում: Տարածքը՝139,4 հզ. *կմ*², բն.՝ 9,8 մլն (2013): Վարչ. կենտրոնը՝ *Ռոլի*:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿԼՋԻ, Խաղաղ օվկ-ում՝ Նոր Զելանդիայում: Տարածքը՝ 115 հզ. *կմ*²: Կան լ-շղթաներ (արլ-ում) և հրաբխ. սարահարթեր (կենտրոնում և արմ-ում)՝ գեյզերներով և ջերմուկներով: Խոշոր ք-ները՝ Վելինգտոն, Օքլենդ:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ, ընդգրկում է Նախակովկասը և Մեծ Կովկասի հս. լանջը (բացառությամբ արլ. մասի), նրա ամբողջ արմ. վերջավորությունը, ինչպես նաև հվ. լանջերը (մինչև Փոսա գետը): Հ. Կ-ում է 7 հանրապետություն (Ադըղեյական, Կարաչևո-Չերքեզիա, Կաբարդինո-Բալկարիա, Հս. Օսիա, Ինգուշեթիա, Չեչնիա, Դաղստան) և 2 երկրամաս (Կրասնոդարի և Ստավրոպոլի), որոնք ներառված են Հվ. և Հյուսիսկովկաս. դաշն. օկրուգներում: Տարածքը՝ 258,3 հզ. *կմ*², բն.՝ 14,8 մլն (2010):

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՎՐՈՍ, **Անտիպոնտոս**, լեռն. համակարգ Հայկ. լ-աշխարհում՝ Գայլ, Ճորոխ և Արմ. Եփրատ գետերի միջև՝ Երզնկայից հս-արմ.: Ձգվում է Էրզրումի (պատմ. Բարձր Հայքի) հս. սահմաններով, հասնում է Թորթումի լ-շղթային, ապա շարունակվում է արլ.՝ մինչև Կարսի սարահարթի սահմանները: Երկ.՝ 650 *կմ*, առլգն բարձր.՝ 3537 *մ* (Լուսավորիչ լ.): Կազմված է կավճի և պալեոգենի խիստ ծալքավոր և բեկորազատված կրաքարերից, մարմարներից, մերգելներից և ավազաքարերից: Կան բազմամետաղների, շինանյութերի և հանք. ջրերի պաշարներ:

«ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀՈՍՔ» (անգլ.՝ Nord Stream, նախկինում՝ Հս-եվրոպ. գազատար), ծով. գազատար, որով ռուս. գազը մատակարարվում է ԵՄ՝ անդամ երկրներին: Առաջին գիծը շահագործվել է 2011-ին, երկրորդը՝ 2012-ին: Մայրուղու երկ. Բալթիկ ծովի հատակով՝ 1220 *կմ* (ՌԴ Վիբորգ ք-ից մինչև Գերմանիայի Գրայֆսվալդ ք.), թողունակությունը՝ 55 մլրդ *մ*³/տարի:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀՌԵՆՈՍ-ՎԵՍՏՖԱԼԻԱ, երկիր Գերմանիայում, Հռենոսի ավազանում՝ Հս-գերմ. դաշտավայրի և Հռենոսյան թերթաքար. լ-ների սահմաններում: Տարածքը՝ 34 հզ. *կմ*², բն.՝ 17,5 մլն (2013): Վարչ. կենտրոնը՝ *Դյուսելդորֆ*:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՐԻԱՆՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ, **Հյուսիսային Մարիանյան կղզիների Համագործակցություն**, վարչ. կազմավորում, ինքնակառավարվող համագործակցություն՝ ԱՄՆ-ի հետ «քաղաքական միության» մեջ: Գտնվում է Խաղաղ օվկ-ի արմ. մասում՝ Մարիանյան կղզեխմբում: Տարածքը՝ 463,6 *կմ*², բն.՝ 53,9 հզ. (2010): Ազգ. կազմը՝ ֆիլիպինցիներ, չինացիներ, չամորոներ: Վարչ. կենտրոնը՝ Սայպան (համանուն կղզում): Պետ. լեզուն՝ անգլ.: Գործադիր իշխանության գլուխը ժողդ-ի ընտրած նահանգապետն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը (Սենատը և Ներկայացուցիչների պալատը): Բնակիչները հիմնականում կաթոլիկ են: Արժույթը՝ ԱՄՆ դոլար: Հ. Մ. կ. պետությունը կազմավորվել է 1976-ին՝ ՄԱԿ-ի հովանու տակ եղած Խաղաղօվկիանոս. կղզիների բաժանման հետևանքով: 1986-ին ուժի մեջ է մտել ԱՄՆ-ի հետ ազատ ասոցիացման համաձայնագիրը: 1993-ին դադարեցվել է ԱՄՆ-ի խնամակալությունը, իսկ 2000-ից երկրի օրենքները՝ նմանեցվել են ամերիկ. օրենքներին:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄ ԽՍՀՄ, կազմավորվել է 1937-ին՝ Հս. ռազմ. նավակազմի (ստեղծվել է 1933-ին) հիմքի վրա: Նախատեսվել է Անդրբալեռի պաշտպ-յան համար: ՀՄՊ-ի ժամանակ ապահովել է առափնյա շրջանների պաշտպ-յունը, ներքին և արտաքին ծով. բեռնափոխադրումների անվտանգությունը ևն: Մասնակցել է ՀՄՊ-ին, 1958-ին նրա կազմի մեջ ներառվել է 1-ին խորհրդ. ատոմային սուզանավը: Նավատորմը ռուս. ՌԾՈՒ-ի ամենախոշոր միավորումն է:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՆԵՂՈՒՏ, Մեծ Բրիտանիա և Իռլանդիա կղզիների միջև: Իռլանդ. ծովը միացնում է Ատլանտ. օվկ-ին: Երկ.՝ 170 *կմ*, լայն.՝ 20–40 *կմ*, խոր.՝ մինչև 272 *մ*: Գլխ. նվինգստ-ը՝ Բելֆաստ:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊԱՍՍԱՏԱՅԻՆ ՀՈՍԱՆՔ, 2 մակերևութ. հոսանքներ Համաշխ. օվկ-ի արևադարձ. լայն-ներում. մեկը՝ Ատլանտ., մյուսը՝ Խաղաղ օվկ-ներում: Ուղղությունը՝ արլ-ից՝ արմ., օվկ-ների արմ. հատվածներում լրացվում են *գոլֆստրիմ* տաք հոսանքների համակարգով:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ (ՆՈՐԴՅԱՆ) ՌԱՍՍ, որոշ երկրների մարդաբանաներ ներառում են եվրոպեոիդ ռասայի կազմում: Բնորոշ են երկայնագլխությունը, բարձր հասակը, բաց գույնի մազերը և աչքերը: Տարածված են Հս. Եվրոպայում: Եզրույթն օգտագործում են այլատյացության տեսաբանները:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍԱՌՈՒՅՑԱԼ ՕՎԿԻԱՆՈՍ, Երկրի ամենափոքր օվկ-ը՝ Եվրասիայի և Հս. Ամերիկայի միջև: Տարածքը՝ 13,1 մլն *կմ*², ծավալը՝ մոտ 17 մլն *կմ*³, առլգն խոր.՝ 5527 *մ*: Բաժանվում է 3 մասի՝ Հս-եվրոպ. (Գրենլանդ., Նորվեգ., Բարենցի, Սպիտակ ծովեր), Արկտիկ. ավազանի և մերձափնյա ցամաք. ծանծաղուտ. ծովերի (Կարայի, Լապտևների, Արլ-սիբիր., Չուկոտյան, Բոֆորտի, Բաֆինի ծովեր և Հուդզոնի ծոց): Կղզիների (Գրենլանդիա, Իսլանդիա ևն) և կղզեխմբերի (Կանադ., Արկտիկ., Շպիցբերգեն ևն) քանակով Խաղաղ օվկ-ից հետո 2-րդն է (ընդհ. տարածքը՝ մոտ 4 մլն *կմ*²): Հատկանում կան մի շարք լ-շղթաներ՝ Մենդելեևի, Հակկելի, Լոմոնոսովի, Նանսենի, որոնց միջև առանձնանում են մի շարք գոգավորություններ, ամենախորը (5449 *մ*) Լիտկենի գոգավորությունն է: Հ. ս. օ. են թափվում Հս. Դվինան, Պեչորան, Օբը, Ենիսեյը, Լենան, Մակենզին և այլ գետեր: Հ. ս. օ. մեծ մասամբ սառցածածկ է: Բուս. և կենդ. աշխարհները՝ արկտիկ. և ատլանտիկ. տեսակներով: Օվկ-ի բնության ուսումնասիրման նպատակով մշտ. գործում են «Հյուսիսային բևեռ» դրեյֆող կայանները:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՕՍԻԱ-ԱԼԱՆԻԱ, **Հյուսիսային Օսիա-Ալանիայի Հանրապետություն**, ՌԴ Հս. դաշն. օկրուգի կազմում: Տարածքը՝ 8 հզ. *կմ*², բն.՝ 701,8 հզ. (2009): Վարչ. կենտրոնը՝ ***Վլադիկավկազ:*** Ազգ. կազմը՝ օսեր (62,7 %), ռուսներ (23,2 %), ինգուշներ (3 %), հայեր (2,4 %), կումիկներ (1,8 %), վրացիներ (1,5 %) ևն (2002):

Կազմավորվել է 1924-ին՝ որպես Հս. Օսեթիայի մարզ, 1936-ին վերակազմավորվել է Հս. Օսիայի ԻԽՍՀ-ի, 1994-ից՝ ներկա անվանումով: Ունի 1 քաղաք. օկրուգ և 8 շրջան: Հայերի առաջին խմբերն այստեղ հաստատվել են XVIII դ-ում, այժմ ապրում են հիմնականում Վլադիկավկազ (3,89 %) և Մոզդոկ (6,1 %) ք-ներում, Վլադիկավկազում գործում են հայկ. եկեղեցի, «Էրեբունի» ազգ. ակումբներ՝ հայոց լեզվի և պատմության դասընթացներով:

ՀՅՈՒՍԻՍԱՏԼԱՆՏՅԱՆ ԴԱՇԻՆՔ 1949, **Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպություն**, ՆԱՏՕ (North Atlantic Treaty Organization), միջկառավար. ռազմ. դաշինք: Ստեղծվել է 1949-ին ԱՄՆ-ի նախաձեռնությամբ՝ 12 երկրի ստորագրությամբ: 1999-ին միացել են Լեհաստանը, Հունգարիան և Չեխիան, 2004-ին՝ Բուլղարիան, Լատվիան, Լիտվան, Ռումինիան, Սլովակիան, Սլովենիան, Էստոնիան, 2009-ին՝ Ալբանիան և Խորվաթիան: 2014-ին ՆԱՏՕ-ի անդամ էր 28 երկիր: ՀՀ-ն համագործակցում է «Խաղաղության համագործակցության» շրջանակներում: Նստավայրը՝ Բրյուսել: Պաշտոն. լեզուները՝ անգլ., ֆրանս.: ՆԱՏՕ-ի շրջանակներում աշխարհում գործում են 16 խաղաղապահ առաքելություններ. ՀՀ-ից՝ 4-ը. 2004-ից՝ Կոսովոյում, 2005-ից՝ Իրաքում, 2010-ից՝ Աֆղանստանում, 2014-ից՝ Լիբանանում:

ՀՅՈՒՍԻՍԱՏԼԱՆՏՅԱՆ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Միջինատլանտ. ստորջրյա լ-շղթայի մի մասն Ատլանտ. օվկ-ում: Երկ.՝ 8,2 հզ. *կմ*, լայն.՝ մինչև 1500 *կմ*: Հատկում են բազմաթիվ բեկվածքներ: Նվզգն խոր. լ-շղթայի վրա՝ 128 *մ*: Առանձին գագաթներ դուրս են գալիս ջրից՝ առաջացնելով կղզիներ (Ազորյան ևն):

ՀՅՈՒՍԻՍԱՏԼԱՆՏՅԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ 1949, կնքվել է ապրիլի 4-ին Վաշինգտոնում՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Բելգիայի, Նիդեռլանդների, Լյուքսեմբուրգի, Կանադայի, Իտալիայի, Պորտուգալիայի, Նորվեգիայի, Դանիայի և Իսպանիայի միջև, որով դրվել է *Հյուսիսատլանտյան դաշինքի* ստեղծման հիմքը:

ՀՅՈՒՍԻՍԱՏԼԱՆՏՅԱՆ ՀՈՍԱՆՔ, օվկիանոս. տաք հոսանք Ատլանտ. օվկ-ի

հս–ում: *Գոլֆստրիմի* անմիջական շարունակությունն է: Սկսվում է Նյուֆաունդլենդյան մեծ ծանծաղուտից, ուղղվում հս–արլ.: Իսլանդիայի մոտ բաժանվում է 2 ճյուղի, հիմն. մասը մտնում է Նորվեգ. ծով (Նորվեգ. հոսանք), ավելի փոքր ճյուղը շրջվում է արմ.՝ Գրենլանդիա՝ Իրմինգերի հոսանք անվամբ: Մեկ այլ ճյուղ Եվրոպայի արմ. ափերով իջնում է հվ և միանում *Կանարյան հոսանքին*: Զգալիորեն ազդում է Եվրոպայի կլիմայի վրա:

ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈԳՀՈՎԻՏ, ստորջրյա գոգհովիտ Խաղաղ օվկ–ի հս–արլ–ում: Գերակշռող խոր.՝ 5000–5500 *մ* (առլգն՝ 7168 *մ*):

ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՐԿԻՐ (Nordaustlandet), կղզի Հս. սառուցյալ օվկ–ում՝ Շպիցբերգեն կղզեխմբում (Նորվեգիա): Տարածքը՝ 14,5 հզ. *կմ*^{2}: Աշտ. բնակչություն չունի: Բարձր.՝ մինչև 637 *մ*: Տարածքի 3/4–ը սառցակալած է:

ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ԾՈՎԱՆՑՔ, ուղի Ատլանտ. օվկ–ից (Եվրոպայի և Ասիայի հս. երկ–յամբ) Խաղաղ օվկ.: Տես նաև *Հյուսիսային ծովային ուղի*:

ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎՄՏՅԱՆ ԳՈԳՀՈՎԻՏ, Խաղաղ օվկ–ի հս–արմ–ում: Տիրապետող խոր.՝ 5000–6000 (առլգն՝ 7374) *մ*: Կենտր. մասում ստորջրյա բարձրություն է:

ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎՄՏՅԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ՕԿՐՈՒԳ ՌԴ, վտմ ՌԴ եվրոպ. մասի հս–ում: Տարածքը՝ 1687 հզ. *կմ*^{2}, բն.՝ 13.437,1 հզ. (2010): Կենտրոնը՝ Ս. Պետերբուրգ: Ներառում է Կարելիայի և Կոմիի Հանրապետությունները, Արխանգելսկի (Նենեց. ԻՕ–ն ներառյալ), Վոլոգոդայի, Կալինինգրադի, Լենինգրադի, Մուրմանսկի, Նովգորոդի, Պսկովի մարզերը և Ս. Պետերբուրգ ք.:

ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎՄՏՅԱՆ ԾՈՎԱՆՑՔ, Կանադ. կղզեխմբի ծովերով ու նեղուցներով անցնող ծով. ուղի Ատլանտ. և Խաղաղ օվկ–ների միջև: Ծով. կարճ ճանապարհով Արմ. Եվրոպան կապում է Արլ. Ասիայի հետ: Հ. ծ. փնտրող առաջին արշավախմբերը կազմավորվել են 1497–1542–ին, որոնք հայտնաբերել են Հս. Ամերիկայի արլ. ծովափը: Առաջին անգամ Հ. ծ–ով արլ–ից արմ. (3 ձմեռումներով) անցել է Ռ. *Ամունդսենը* (1903–06) «Յոա» նավով: 1944–ին ծովանցքը նույն ուղղությամբ մեկ նավագնացության ընթացքում անցել է Գ. Լարսենը «Անթ Ռոք» նավով:

ՀՅՈՒՍԻՍԱՓՅԼ, **բևեռափայլ**, մթն–ի վերին շերտերի (100–1000 *կմ*) լուսարձակում: Դիտվում է Երկրի բևեռ. շրջաններում, հազվադեպ՝ նաև միջին լայն–ներում (Հայաստանում 1098–1100–ին դիտվել է 4 Հ.): Հ. Արեգակի ակտիվության հետևանք է: Լինում է համասեռ, ճառագայթ. և առկայծող տիպի, կանաչ, կապույտ, դեղին, կարմիր և մանուշակագույն:

ՀՅՈՒՍԻՍԱՖՐԻԿՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔ 1940–43, ռազմ. գործողություններ անգլո–ամերիկ. և իտալա–գերմ. զորքերի միջև Հս. Աֆրիկայում ԵՀՊ–ի տարիներին: 1942–ին գեն. Բ. Մոնտգոմերիի 8–րդ անգլ. բանակը ճեղքել է իտալա–գերմ. զորքերի ռազմաճակատը՝ Էլ–Ալամեյնի մոտ, Կասաբլանկայում (Մարոկկո) ափ են իջել ամերիկ. զորքերը՝ գեն. Դ. Էյզենհաուերի հրամանատարությամբ: Իտալա–գերմ. զորքերը հետ են քաշվել դեպի Թունիս, իսկ 1943–ին անձնատուր եղել Բոն թ–կղզում:

ՀՅՈՒՍԻՍԽԱՂԱՂՕՎԿԻԱՆՈՍՅԱՆ ՀՈՍԱՆՔ, տաք հոսանք Խաղաղ օվկ–ի հս. մասում՝ մոտավորապես հս. լայն–յան 35–42º–ի, արմ. մասը՝ արլ. երկայն–յան 140–160º–ի միջև: Կուրոսիոյի շարունակությունն է: Արմ. մասում ճյուղավորվում է Ալյասկայի և Կալիֆոռնիայի հոսանքների: Փչում է արլ.:

ՀՅՈՒՍԻՍԿՈՎԿԱՍՅԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ՕԿՐՈՒԳ, վտմ ՌԴ եվրոպ. մասի ծայր հվ–ում: Տարածքը՝ 170,4 հզ. *կմ*^{2}, բն.՝ 9254,9 հզ. (2010): Կենտրոնը՝ Պյատիգորսկ: Ներառում է Դաղստանի, Ինգուշեթիայի, Կաբարդինո–Բալկարիայի, Կարաչաևո–Չերկեսիայի, Հս. Օսիա–Ալանիայի, Չեչնիայի Հանրապետությունները և Ստավրոպոլի երկրամասը:

ՀՅՈՒՍԻՍԿՈՎԿԱՍՅԱՆ ԼԵՋՈՒՆԵՐ, իբերա–կովկաս. լեզվաընտանիքի ճյուղերից: Ունի 3 ենթաճյուղ՝ արլ. (դաղստանյան), միջին (բացբիա–կիստինյան), արմ. (արխազ–ադղղեական):

ՀՅՈՒՍԻՍԿՈՎԿԱՍՅԱՆ ՄՍԱԲԴԱՏՈՒ ՈՉԽԱՐ, կիսանրբագեղմ ցեղ: Ստացվել է ՌԴ Ստավրոպոլի երկրամասում՝ տարբեր ցեղերի տրամախաչման և «ինքն իր մեջ» բուծելու մեթոդով: Խոյերի կ. զ.՝ 90–100, մաքիներինը՝ 55–60 *կգ*: Բրդատվությունը՝ համապատասխանաբար՝ 9–13 և 5,5–6,5 *կգ*: Տարածված է ՌԴ–ում, Ղազախստանում, Այսրկովկասում, Մոնղոլիայում և այլուր: ՀՀ–ում հաստատվել է որպես բարելավող ցեղ:

ՀՅՈՒՍՅԱՆ Մինաս Գրիգորի (1903–1994), գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1962), պրոֆ. (1963): Հեղինակ է «Գրիգոր Զոհրապի արվեստը» (1964), «Մեծ եղեռնի զոհ գրողները» (1965), «Էջեր արևմտահայ գրականության պատմությունից» (1977) և այլ աշխ–ների:

ՀՅՈՒՍՆՈՒՆՑ Արմեն Լեոնիդի (ծ. 1966), սաքսոֆոնահար: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2011): «Թայմ Ռիփորթ» («Time Report», 1996, Խ. Սահակյանի հետ) էթնո–ջազ կվինտետի և «Արտասաքս» («Artasax», 2000) սաքսոֆոն. քառյակի հիմնադիրը, 1988–89–ին՝ Հայաստանի ջազ. պետ. նվագախմբի (1997–2005–ին՝ երաժշտ. ղեկ., 2010–ից՝ գեղ. ղեկ. և դիրիժոր), 1989–93–ին՝ Երևանի կամեր. թատրոնի ջազ. քառյակի, 1990–92–ին՝ Հայկ. հեռուստառադիոյի ջազ. պետ., 1992–2004–ին՝ Ֆիլհարմոնիկ նվագախմբերի, 1998–ից, միաժամանակ՝ «Արմինիան Նեյվի Բենդ» («Armenian Navy Band»), 2011–ից՝ «Փենսման Բենդ» («Penman Band») խմբերի մենակատար:

ՀՅՈՒՍՎԱԾՔԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, հիստոլոգիա, գիտ–յուն մարդու և բազմաբջիջ կենդանիների հյուսվածքների մասին: Որպես ինքնուրույն գիտ–յուն՝ ձևավորվել է 1880–ական թթ–ին՝ կապված նրա հետազոտության հիմն.՝ մանրադիտակային մեթոդի ներդրման հետ: Հայաստանում Հ., որպես գիտ–յուն, սկսել է զարգանալ 1920–ական թթ–ի վերջերից, երբ ԵՊՀ–ում և Երևանի անասնաբուժ–անասնաբուժ. ինստ–ում կազմակերպվել են Հ–յան ամբիոնները:

ՀՅՈՒՍՎԱԾՔԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, բուժ. մեթոդ. կենդ. կամ բուս. հյուսվածքների կամ նրանց պահածոյացրած պատրաստուկների ներմուծումն աչքի շաղկապենու և մաշկի մեջ: Առաջարկել է Վ. Պ. *Ֆիլատովը* (1933):

ՀՅՈՒՍՎԱԾՔԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, էքսպլանտացիա (լատ.՝ explanto – արմատախիլ անել), մարդու, կենդանիների և բույսերի օրգանիզմներից անջատած բջիջների, հյուսվածքների, փոքր օրգանների կամ դրանց մասերի երկարատև կենդանի պահպանումն ու աճեցումը հատուկ սննդ. միջավայրերում:

ՀՅՈՒՍՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅՈՒՆ, օրգանիզմների համատեղելիություն, որն ապահովում է փոխպատվաստված օրգանների և հյուսվածքների սերտաճումը: Բոլոր գեներով լրիվ Հ. հ. տեղի ունի միայն միաձվածին երկվորյակների և միասեռ առանձնյակների մոտ, որոնք պատկանում են կենդանիների նույն ինբրեդային գծին: Բնական օտար պատվաստ կարող է լինել կաթնասունների զարգացող պտուղը, որը չի պոկվում մոր իմունային մեխանիզմների ազդեցությամբ՝ նրա արգանդի բազմաշերտ պաշտպ. պատնեշների առկայության շնորհիվ:

ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐ (կենսբ.), ծագումով, կառուցվածքով ու ֆունկցիայով նման բջիջների և միջբջջային նյութի համակարգը: Հ–ի կազմի մեջ են մտնում նաև հյուսվածք. հեղուկը և բջիջների կենսագործունեության արգասիքները: Տարբերում են կենդանիների Հ–ի 4 խումբ՝ էպիթելային, շարակցական, մկան. և նյարդ., բույսերի՝ 3՝ ծածկող, փոխադրող և հիմնական:

ՀՅՈՒՍՈՒՄ, որոշ տնտ. առարկաներ (կողով, սալա, մաղ, պարան ևն) պատրաստելը առանձին ծառատեսակների ճկուն, դալար ճյուղերից, ծղոտից, եղեգից, կաշվից ևն: Հայաստանում զարգացել է միջին դարերում (զամբյուղի մնացորդներ են հայտնաբերվել Անիի պեղումներից): Պահպանվել է ՀՀ որոշ մարզերում, նաև Արցախում և Ջավախքում: Առանձին (հատկապես՝ արլ.) երկրներում լավ զարգացած է:

ՀՅՈՒՐՄՅՈՒՋՅԱՆ (Հյուրմյուզ) Գևորգ (1797–1876), թարգմանիչ, եկեղեց., կրթ., մշակույթի գործիչ: ՎնտՄՄ անդամ (1819), աբբահայր (1846): Էդուարդ *Հյուրմյուզյանի* եղբայրը: Թարգմանել է Շ. Ռոլենի «Հնախօսութիւն...» (հ. 1–6, 1825–29, եղբոր հետ) աշխ–ը, Պ. Կոռնելի «Պողիկտոս վկայ Հայկազն» (1858), Պ. Մետաստազիոյի «Թեմիստոկլէս» (1886) չափածո ողբերգությունները: Հեղինակ է «Հրիտակատար» (1856), «Հնախոյզ» (1857) կատակերգությունների:

ՀՅՈՒՐՄՅՈՒՋՅԱՆ (Հյուրմյուզ) Էդուարդ (1799–1876), բանաստեղծ, բանասեր, լեզվաբան, աստվածաբան, թարգմանիչ: ՎնտՄՄ անդամ (1819): Գևորգ *Հյուրմյուզյանի* եղբայրը: Թարգմանել է Վ. Ալֆիերիի, Ա. Մանցոնիի, Պ. Մետաստազիոյի, Պ. Վիրգիլիոսի, Վ. Մոնտի, Ժ. Ռասինի գործերից, նաև Շ. Ռոլենի «Հնախօսութիւն...» (հ. 1–6, 1825–29, եղբոր հետ) աշխ–ը: Հեղինակ է «Դուռն քերականութեան հայկազնեան լեզուի» (1833), «Քերականութիւն գործնական...» (1836), «Յաւարտ տպագրութեան մեծի հայ բառագրոց» (1838), «Համառօտ քերականութիւն լատին բարբառոյ», «Առձեռն ճարտասանութիւն», «Առձեռն բանաստեղծութիւն...» (երեքն էլ՝ 1839) «Առձեռն դիցարանութիւն կամ Առասպելախառն վէպք...» (1840), «Բառգիրք յաշխարհաբարէ ի գրաբար» (1869), «Ձրօսարան տօնից, այսինքն տօներու վրայ մտածականներ» (1874) և այլ աշխ–ների, «Բուրաստանք» (1851) բանաստեղծությունների ժող–ի:

ՀՆԱԱրեվադարձային բուսական թագավորություն, զբաղեցնում է Արլ. կիսագնդի ընդարձակ տարածքներ՝ բացառությամբ Ավստրալիայի: Ֆլորայում գերակշռում են արմավենիները, բեգոնազգիները, միմոզազգիները և այլն: Կան շուրջ 40 բնաշխարհիկ ընտանիքներ: Բնորոշ է տեսակային մեծ բազմազանությունը (օր.՝ Հնդկաստանի ֆլորայում կա շուրջ 21 հզ. տեսակ): Բաժանվում է 5 ենթաթագավորության՝ Աֆրիկայի, Մադագասկարի, Հնդ–Մալեզիական, Պոլինեզիական և Նորկալեդոնյան:

ՀՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, **արխաիզմներ**, կենդանի լեզվի տվյալ փուլում գործածությունից դուրս եկած լեզվ. միավորներ (բառեր, ոճեր, քերական. ձևեր, շարահյուս. կառուցվածքներ), որոնց հասկացությունը ևս հնացած է: Հ. տարբեր են պատմական բառերից (սեպուհ, գահապահ ևն):

ՀՆԱԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ***հնէաբանության*** բաժին. ուսումնասիրում է բրածո բույսերը:

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, գիտահաս. կազմ–յուններ, որոնց նպատակը նյութ. մշակույթի հուշարձանների ուսումնասիրությունն է և պահպանությունը: Առաջին Հ. ը. ստեղծվել են XVI դ–ում (Անգլիա, Իտալիա), առավել տարածվել են XIX–XX դդ–ում: ՀՀ–ում Հ. ը. է պատմ. հուշարձանների պահպանության ընկ–ը ևն:

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԹՎԱԳՐՈՒՄ, հնագիտ. հուշարձանի տարեթվի որոշումը: Իրականացվում է հնագիտ. մեթոդներով (շերտագր., տիպաբան.) և ճշգրիտ գիտ–ների մեթոդներով (թվագրման ռադիոածխածնային մեթոդ ևն):

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ, հնագույն շրջանում մարդու պատրաստած իրեր և կերտած կառույցներ, դամբարաններ, որոնք, պահպանվելով հողի մակերևույթին կամ ընդերքում, ջրի տակ, ենթակա են հնագիտ. ուսումնասիրության: Հ. հ. առարկայական աղբյուրներ են, որոնցով կարելի է վերականգնել մարդկային հաս–յան պատմ. անցյալը:

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀՀ ԳԱԱ, հիմնադրվել է 1959–ի հուլիսի 1–ին՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ–ի հնագիտ–յան բաժնի և ազգագր. խմբի հիման վրա: 1961–ին Գրկ–յան ինստ–ից այնտեղ է փոխադրվել բանահյուսության բաժինը, 1973–ին ստեղծվել է մարդաբանության լաբորատորիա: ԳՀ աշխ–ներ է կատարում Հայաստանի հնագիտ–յան, հայ ազգագրության, հայ ժող. բանահյուսության և մարդաբանության բնագավառներում: Ինստ–ը հրատարակել է «Դիվան հայ վիմագրության» (պր. 1–9, 1960–2012), «Հայ ժողովրդական հեքիաթներ» (հ. 1–17..., 1959–2012...), «Հնագիտական պեղումները Հայաստանում» (հ. 1–25..., 1950–2012...) և այլ մատենաշարեր: Տնօրեններ՝ Բարկեն Առաքելյան, Գևորգ Տիրացյան, Արամ Քալանթարյան, Պավել Ավետիսյան (2006–ից):

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, նյութ. աղբյուրների (հիմնականում՝ պեղածո) հիման վրա հին հաս–յունն ու նրա մշակույթն ուսումնասիրող գիտ–յուն: Անմիջական օբյեկտը հնագիտ. հուշարձանն է, ընդհանրացված առարկան՝ հնագիտ. մշակույթը: Նպատակը պեղածո նյութերի հիման վրա անցյալի մշակույթների զարգացման և հաս–յունների պատմ–յան գիտ. պարզաբանումն է:

ՀՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, **պալեոգրաֆիա** (հուն.՝ palaios – հին և ...***գրաֆիա***), պատմ. օժանդակ գիտաճյուղ. ուսումնասիրում է գրի զարգացման պատմ–ը, գրատեսակների ու գրանշանների կրած փոփոխությունները, հնագույն գրավոր հուշարձանները և հարակից խնդիրները: Ձևավորվել է XVIII դ–ում, մասնավորապես՝ ֆրանսիացի գիտնական Բ. Մոնֆոկոնի ջանքերով (1–ին անգամ նա է գործածել «Հ.» տերմինը):

ՀՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ, երաժշտապատմ. գիտաճյուղ. ուսումնասիրում է երաժշտ. գրության հին համակարգերը, երաժշտ.նշանների զարգացման օրինաչափությունները, նրանց գծագր. ձևերի փոփոխությունը, երաժշտ. գրության հին հուշարձանները: Հիմն. խնդիրը երաժշտ. գրության մոռացված համակարգերի վերծանումն է և նրանցով գրառված երաժշտության փոխադրումը ժամանակակից գծային նոտագրության: Ձևավորվել է XIX դ–ի կեսերին: Հայկ. խազ. նոտագրությունն ուսումնասիրել են եվրոպացի և հայ (Ե. Տնտեսյան, Կոմիտաս, Ռ. Աթայան, Ն. Թահմիզյան և ուր.) բազմաթիվ երաժշտագետներ:

ՀՆԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔՆԵՐ սևծովյան ավազանում, առաջացել են մ. թ. ա. VI դ–ում՝ հուն. գաղութացման սկզբն. շրջանում: Խոշորագույն Հ. ք. էին՝ հս–ում՝ Տիրը, Օլբիան, Խերսոնեսը, Թեոդոսիան, Պանթիկապեան, Թանաիսը, Կովկաս. առափնյա շրջանում՝ Դիոսկուրիան, Փասիսը: Հիմնականում զբաղվել են Հին Հունաստանի և Փոքր Ասիայի քաղաքների հետ առևտրով: Մ. թ. ա. V դ–ում դրանց մի մասը միավորվել է Բոսպորի թագավորության մեջ: Մ. թ. ա. III դ–ից ենթարկվել են սկյութների և սարմատների հարձակումներին: Մ. թ. ա. II դ–ում եղել են Պոնտ. թագավորության, ապա՝ Հռոմի տիրապետության տակ: Հոների և գոթերի արշավանքներից (III դ–ի կես–IV դ–ի վերջ) հետո անկում են ապրել: Հ. ք–ի բացահայտման և ուսումնասիրության գործում զգալի ավանդ ունի Ռուբեն *Որբելին*:

ՀՆԱԳԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, տարատեսակ կրոն. խմբերի և եկեղեցիների ամբողջություն Ռուսաստանում: Սկզբնավորվել է XVII դ–ի կեսին: ՌՈՒԵ բաժանման հետևանքով եկեղեցին հրաժարվել է ընդունել Նիկոն պատրիարքի նորամուծությունները: Հ. պաշտոն. եկեղեցուն ենթարկելու համար XIX դ–ում ստեղծել են Միահավատ եկեղեցին: Հ–յան բազմաթիվ կազմ–յուններ են ի հայտ եկել XXI դ–ի սկզբին (Ռուս ուղղափառ հնադավան եկեղեցի ևն): ՌՈՒԵ–ն Հ–յան բանադրանքը հանել է 1971–ին:

ՀՆԱԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ***հնէաբանության*** բաժին. ուսումնասիրում է բրածո կենդանիները:

ՀՆԱՀՐԱԲԽԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, երկրբ–յան բաժին. ուսումնասիրում է անցյալ երկրբ. ժամանակաշրջանների ***հրաբխայնությունը***:

ՀՆԱՄԻԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, **պալեոասիական լեզուներ**, Հս. և Հս–արլ. Ասիայի, նաև Հս. Ամերիկայի մի շարք լեզուների պայման. անվանումը: Հ. լ. կազմում են 3 խումբ՝ չուկոտա–կամչատական (չուկոտ., կորյակ., կերեկ., իտելմենն.), էսկիմոսական (էսկիմոս., ալեուտ.) և կետական (կետ., նաև մեռած կոտտ., արին., ասան.): Նորագույն աղբյուրներում Հ. լ. բաժանում են 2 խմբի՝ էսկիմոսա–ալեուտյան և կամչատկա–չուկոտյան:

ՀՆԱՏԻՊ ԳԻՐՔ, 1512–1800–ին տպագրված հայ. գրքերի պայման. անվանումը: Ըստ հայ բանասիրության ավանդույթի՝ հնատիպ են համարվում մինչև 1800–ի դեկտ. 31–ը (ոմանց կարծիքով՝ մինչև 1825–ը) տպագրված հայատառ գրքերը: Հայ. Հ. գ–երի թիվը շուրջ 1100 է:

ՀՆԱՐԱԿԵՐՏ, **Հունարակերտ**, բք Մեծ Հայքի Ուտիք և Գուգարք նահանգ–ների սահմանագծին՝ Կուր և Խրամ գետերի միախառնման տեղում՝ սեպաձև հրվանդանի վրա (այժմ՝ ավերակ): Մովսես Խորենացու վկայությամբ՝ եղել է Սիսակյան Առանի ժառանգության հս–արմ. սահմանագլուխը: Հ. ունեցել է հաջորդաբար կառուցված 3 ամրոց, որոնք միմյանցից բաժանվել են Կուրից մինչև Խրամ փորված խրամով:

ՀՆԱՐԱՎՈՐ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԿԶԲՈՒՆՔ, ***մեխանիկայի վարիացիոն սկզբունքներից,*** ըստ որի՝ նյութ. մարմինների մեխ. համակարգի հավասարակշռության համար անհրաժեշտ է և բավարար, որ ցանկացած հնարավոր տեղափոխության դեպքում համակարգի վրա կիրառված բոլոր ուժերի կատարած աշխ–ների գումարը հավասար լինի զրոյի: Հ. տ. ս. կիրառվում է բարդ մեխ. համակարգերի (մեխանիզմներ, մեքենաներ) հավասարակշռության պայմաններն ուսումնասիրելիս:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, փիլ. կատեգորիաներ, որոնք արտահայտում են առարկաների և երևույթների զարգացման հիմն. աստիճանները: Հ. և ի. Արիստոտելը մանրամասնորեն բնութագրել է շարժման, փոփոխության և կայացման վերլուծության առնչությամբ: Հնարավորությունն առարկայի զարգացան միտումն է, իրականությունը՝ օբյեկտիվորեն գոյություն ունեցող առարկան՝ որպես որոշակի հնարավորության իրականացման արդյունք: Տարբերակում են վերաց. կամ ձևական (որի իրականացման համար բացակայում են որոշ անհրաժեշտ պայմաններ) և ռեալ (երբ առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները) հնարավորությունները:

ՀՆԱՔԱՂԱՔՆԵՐ, մ. թ. ա. IV–II հզ–ամյակներին պատկանող, հաճախ՝ 1 կամ մի քանի պարիսպներով շրջափակված բնակատեղիների պայման. անվանումը հնագիտ–յան մեջ: Կառուցվել են հիմնականում քարով կամ կավով: Հայաստանի տարածքում Հ–ի ցայտուն օրինակ է *Շենգավիթը*:

ՀՆԳԱՄԱՏ ՃԱԳԱՐԱՄԿՆԵՐ (Allactagidae), **ցատկամկներ**, կրծողների կարգի կաթնասունների ընտանիք: Հայտնի է 6 ցեղի 14 տեսակ, ՀՀ–ում՝ 2՝ փոքրասիական ճագարամուկը և փոքր ճագարամուկը: Մարմնի երկ.՝ 85–230, պոչինը՝ 80–315 *մմ*, կ. զ.՝ 40–415 *գ*: Հետևի ոտքերը երկար են, թաթերը՝ հնգամատ, արտաքին և ներքին մատները՝ խիստ կարճացած՝ հարմարված երկոտանի հետաթռիչքային (ոչիկշետային) արագ վազքին: Տեսակների մեծ մասը գիշեր. կյանք է վարում, ամենակեր կամ բուսակեր են: Ձմռանը քուն են մտնում:

ՀՆԳԱՄԱՍՅԱՆ, Աստվածաշնչի առաջին 5 գրքերը (հուդայականության մեջ՝ ***Թորա*** – օրենք)՝ Ծննդոց, Ելք, Ղևտական, Թվեր, Երկրորդ օրենք: Ըստ հուդայական և քրիստ. ավանդությունների՝ Հ–ի հեղինակը ***Մովսես*** մարգարեն է (այստեղից էլ՝ հին

անվանումը՝ Մովսիսական օրենքներ): Համաձայն աստվածաշնչագիտ–յան տարածված վարկածի՝ Հ. ստեղծվել է մ. թ. ա. IX–V դդ–ի միջակայքում՝ մի քանի (ավելի հաճախ՝ 4) տեքստերի միացումով:

ՀՆԳԱՄԱՐՏ, մարզաձևերի տարբեր համալիր մրցումներ. կազմված են 5 նույնանուն կամ տարանուն մարզաձևերից, օր.՝ **աթլետիկական Հ.** (2 վազքաձև, 2 թռիչքաձև և նետում), ***ժամանակակից* Հ.** (ձիասպորտ, սուսերամարտ, հրաձգություն, վազք, լող), **ծանրաթլետիկական Հ.** ևն:

ՀՆԳԵԿ, հողահարկ Հայաստանում IX–XIII դդ–ում: Կազմել է ջրարբիացվող հողերից ստացվող եկամուտների 1/5–րդ մասը: Կիլիկյան Հայաստանում՝ բնամթերային վճարը (1/5–րդ մասը, որից էլ՝ անվանումը):

ՀՆԴԱՐԻԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, հնդկական լեզուներ, ցեղակից լեզուների խումբ: Հ. լ. բաժանվում են զարգացման 3 շրջանի՝ հին (ներկայացված են ***սանսկրիտ*** և ***վեդաների*** լեզվով՝ մ. թ. ա. II հզ–ամյակ–մ. թ. ա. I հզ–ամյակ), միջին (պալի, պրակրիտ, ապաբրանշա, որն առաջացել է մ. թ. I հզ–ամյակի կեսերին՝ հինհնդ. բարբառների խոսակց. ձևերի զարգացումով), նոր (ժամանակակից. ընդգրկում է մոտ 30 հզ. լեզուներ ու բարբառներ). տարածված է Հս. ու Կենտր. Հնդկաստանում, Պակիստանում, Բանգլադեշում, Նեպալում, Շրի Լանկայում, Մալդիվների Հանրապետությունում, Տաջիկստանում: Հ. լ–ի խոշորագույն լեզուներից են ***հինդին***, ***ուրդուն***, բենգալ–ը, փենջաբ–ը, հուջարաթ–ը, մարաթին: Հ. լ–ին են պատկանում նաև գնչուական լեզուները: Հ. լ–ով խոսողների թիվը 1 մլրդ է (XXI դ–ի սկիզբ):

ՀՆԴԵՎՐՈՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, պատմահամեմատ. լեզվաբ–յան բաժին: Ձևավորվել է XIX դ–ում: Հ–յան ներկայացուցիչները (Ռ. Ռասկ, Ֆ. Բոպպ, Ա. Շլայխեր, Կ. Բրուգման, Ֆ. դը Սոսյուր, Ա. Մեյե, Հ. Հյուբշման և ուր.) գիտականորեն ուսումնասիրել են ***հնդեվրոպական լեզուները***:

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, Եվրոպայում ցեղակից լեզուների ամենամեծ ընտանիքը (շուրջ 140 լեզու): Վերջին 5 դարում տարածվել է նաև Հս. և Հվ. Ամերիկայում, Ավստրալիայում, մասամբ՝ Աֆրիկայում: Հ. լ–ին են պատկանում հնդիրան., իտալ. (այդ թվում՝ լատ–ը), ռոման., կելտ., գերմ., բալթ., սլավն., խեթա–լուվիական (հին անատոլիական), թոխար. լեզուները, հուն–ը, հայ–ը, ալբան–ը, նաև մեռած լեզուներից՝ փռյուգ–ը, վենետ–ը, պելասգ–ը, հին մակեդոն–ը, իլլիր–ը և այլ լեզուներ: Հ. լ–ի ընդհանրությունները՝ և՛ նյութ., և՛ կառուցվածք., ի հայտ են գալիս լեզվ. բոլոր մակարդակներում (ազգակցություն ցույց տվող բառերը, դերանունները, թվականները, քերական. կառուցվածքին բնորոշ թեքականությունը): Հ. լ–ով խոսողների թիվը 2 մլրդ է (XXI դ–ի սկիզբ). գերակշռում են անգլ–ով խոսողները:

ՀՆԴԻԿՆԵՐ, էթնիկ. ընդհանրություն, Հնդկաստանի հիմն. բնակչությունը: Ապրում են նաև այլ երկրներում: Ընդհ. թվաքանակը՝ 1,2 մլրդ (2002): Խոսում են հինդի և անգլ. լեզուներով: Դավանում են հինդուիզմ (80,5 %), մահմեդականություն (13,4 %), քրիստոնեություն (2,3 %): Կան նաև բուդդայականության, ջայնիզմի և այլ հավատալիքների հետևորդներ:

ՀՆԴԻՐԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, հնդեվրոպ. լեզվաընտանիքի արիական ենթաճյուղ. ներառում է հնդ. (հնդարիական), իրան. և դարդյան լեզուները:

ՀՆԴԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ (ՀԱԿ), քաղ. կուս–յուն Հնդկաստանում: Հիմնադրվել է 1885–ին: 1920–ական թթ–ից ակտիվացրել է ազգ–ազատագր. պայքարը Հնդկաստանում: Կուս–յան հիմն. գաղափարախոսությունը եղել է ***գանդհականությունը***: Հնդկաստանի անկախությունից (1947) մինչև 1977–ը և 2004–14–ին ՀԱԿ–ը եղել է իշխող կուս–յուն: Բազմիցս պառակտվել է: 1980–89–ին իշխանությունը 1977–ին ՀԱԿ–ից անջատված ՀԱԿ(Ի)–ի ձեռքին էր, որի նախագահը Ն. Ռաոն էր (1991–ից, 1984–91–ին՝ Ռ. ***Գանդին***, 1978–84–ին՝ Ի. ***Գանդին***):

ՀՆԴԿԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ 1857–59, Սիպահիական ապստամբություն անգլիացի գաղութարարների դեմ: Կենտրոնը Գանգես գետի հովիտն էր: Դելի, Կանպուր, Լաքհնաու ք–ներում ձևավորվել էին անկախ կառ–յուններ: Դաժանորեն ճնշվել է: Հնդկաստանի կառավարումն Արևելահնդ. ընկ–ից անցել է անգլ. կառ–յանը:

ՀՆԴԿԱԿԱՆ ԳԻՐ, Ասիայի վանկագր. համակարգերի ընդհ. անվանումը. միմյանց հետ կապված են ընդհ. ծագմամբ և այբուբենի կառուցման միասն. սկզբունքով: Ծագել է ***բրահմա*** գրից: Բաժանված է 3 հիմն. ճյուղերի՝ հս. (տիբեթ., նագարի, դևանագարի, շարադա, նևարի, բենգալ., օրիա, հուջարաթի, գուրմուխին), հվ. (կաննադա, թելուգու, մալայալամ և թամիլ.), հվ–արլ. (սինգալ., բիրման., լաոս., թայ. ևն):

ՀՆԴԿԱԿԱՆ ՕՎԿԻԱՆՈՍ, երկրագնդի՝ մեծությամբ 3–րդ (Խաղաղ և Ատլանտ. օվկ–ներից հետո) օվկ–ը՝ Ասիայի, Աֆրիկայի, Ավստրալիայի և Անտարկտիդայի միջև: Մակերեսը (ծովերով)՝ 76,17 մլն *կմ*^{2}, միջին խոր.՝ 3371 *մ*, ծավալը՝ 291 945 հզ. *կմ*^{3} (առանց ծովերի): Մյուս օվկ–ների համեմատությամբ՝ ծովերը (Կարմիր, Անդամանյան, Արաբ., Արաֆուրյան, Դյուրվիլի, Դևիսի, Թիմուրյան, Կարմիր) քիչ են: Ծոցերից են Պարսիցը, Բենգալյանը, Մեծ Ավստրալականը: Ստորջրյա Կենտրոնահնդ. լ–շղթայով բաժանված է Արաբ., Արևմտաավստրալ. և այլ գոգավորությունների: Լ–շղթայի արմ–ում են Մադագասկար, Սեյշելյան, Ամիրանտյան, Մասկարենյան և այլ կղզիներ, արլ–ում՝ օվկ–ի ավելի խոր մասը (7729 *մ*): Լ–շղթաներով, լեռներով և ձորակներով տրոհված են գետահովիտների (Արմ., Ավստրալ., Աֆրիկաանտարկտիկ. ևն): Շելֆերում կան նավթի և գազի (Պարսից ծոցի գազանավթ. ավազան), խութ. գոտում՝ քրոմի, երկաթի, մանգանի, պղնձի հանքավայրեր: Նշանավոր լ–շղթան Արևելահնդկականն է: Կլիման հս. մասում մուսսոնային է, մերձարևադարձ. և արևադարձ. լայն–ներում գերակշռում են պասսատային քամիները, բարեխառն գոտում՝ մեծ ուժգնության ցիկլոններ: Ձկնորսությունը զարգացած է միայն առափնյա շրջանում: Կարևոր նվինգստներն են Ադենը, Ռոմբեյը, Կալկաթան, Կարաչին, Բասրան ևն:

ՀՆԴԿԱՀԱՅ ԽՈՍՎԱԾՔ, նույնն է, ինչ ***Ջուղայի բարբառը***:

ՀՆԴԿԱՀՈՎԵՐ, ճոլոկներ, գոռեղներ, հավերի կարգի հնդկահավերի ընտանիքի թռչուններ: Հայտնի է 1–ական տեսակով 2 սեռ՝ ԱՄՆ–ում և Մեքսիկայում: Ընտանի Հ. գղտ. թռչուններից ամենախոշորն են (կ. զ.՝ 12–16, առլզն՝ 20 *կգ*): ՀՀ–ում բուծում են մասնագիտացված և առանձին գյուղաց. տնտ–ներում:

ՀՆԴԿԱՉԻՆ, թ–կղզի Ասիայի հվ–արլ–ում: Տարածքը՝ մոտ 2 մլն *կմ*^{2}: Ողողվում է Բենգալյան ծոցի, Անդամանյան ծովի, Մալակկայի նեղուցի, Հվ–չին. ծովի, Սիամի և Բակբո ծոցերի ջրերով: Հ–ում են Թաիլանդը, Վիետնամը, Կամպուչիան, Լաոսը և մասամբ՝ Մալայզիան, Մյանմաան, Բանգլադեշը: Արլ–ում Արկանյան լ–ներն են, կենտրոնում՝ Շան բարձրավանդակը և Տանենթաուջի լ–շղթան, արլ–ում՝ Չիռնգշոն լ–շղթան, հվ–ում՝ Կորատ սարահարթը, Իրավադի, Մենամի և Կամպուչ. հարթավայրերը: Ամենաբարձր կետը՝ 3053 *մ* (Վիկտորիա լ.): Կլիման մերձհասարակածային է, հվ–ում՝ հասարակածային: Գլխ. գետերն են Իրավադին, Սալուինը, Մենամ–Չաո–Պրայան, Մեկոնգը: Կան բազմաթիվ լճեր: Բուսականությունը՝ արևադարձ., խոնավ, մշտադալար անտառներ, սավաննաներ: Հ–ում են անագի, վոլֆրամի աշխարհի խոշորագույն հանքավայրերը:

ՀՆԴԿԱՍՏԱՆ, պետություն Հվ. Ասիայում: Սահմանակից է Աֆղանստանին, Չինաստանին, Նեպալին, Բութանին, Մյանմային, Բանգլադեշին և Պակիստանին: Տարածքը՝ 3,3 մլն *կմ*^{2}, բն.՝ 1,3 մլրդ (2013): Մայրաքաղաքը՝ ***Նյու Դելի***: Պետ. լեզուները՝ հինդի և անգլ. (նհնգ–ներում՝ ևս 21 լեզու): Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը: Բաժանված է 28 վարչ. նհնգ–ների, 6 միութ. տարածքի և Դելիի Ազգ. մայրաքաղաք. տարածքի: Հավատացյալների մեծ մասը հնդուական է, կան մահմեդական–ներ և քրիստոնյաներ: Անդամակցում է ՄԱԿ–ին, Ազգերի համագործակցությանը, ԲՈՒՀՉՀ–ին (BRICS), ԱոտՀԿ–ին: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 6,6 հզ. ԱՄՆ դոլար է (2015): Արտահանում է համակարգչ. ծրագրեր, նավթաքիմ. ապրանքներ, գյուղմթերք, դեղեր, ոսկերչ. իրեր, տեքստիլ ևն, ներմուծում՝ նավթ, ոսկի և թանկարժեք քարեր, մեքենաներ ու սարքավորումներ, քիմիկատներ, պլաստմասսաներ ևն: Դրամ. միավորը՝ հնդ. ռուփի:

Մ. թ. ա. IV հզ–ամյակի 2–րդ կեսին և II հզ–ամյակի 1–ին կեսին Ինդոսի հովտում զարգացել է Խարապպա քաղաքակրթությունը: Մ. թ. ա. II հզ–ամյակի 2–րդ կեսին Հ. են թափանցել արիական ցեղերը: Մ. թ. ա. III դ–ում, Մաուրյաների դինաստիայի օրոք, ստեղծվել է միասն. Հ. պետությունը: I դ–ում Հ. բաժանված էր բազմաթիվ մեծ ու փոքր պետությունների: IV դ–ի սկզբին Չանդրա Գուպտա I–ը Գանգեսի հովտում ստեղծել է Գուպտաների խոշոր պետությունը: Այս ժամանակաշրջանը համարվում է Հ–ի ոսկեդարը և աչքի է ընկնում իր մշակույթով, առաջին հերթին՝ ճարտ–յամբ: VIII դ–ում Հ. են ներխուժել արաբները, երկրում տարածվել է մահմեդականությունը: XIII դ–ում Հս. Հ. ենթարկվել է մոնղոլ նվաճողների հարձակմանը: 1398–ին Դելի է ներխուժել ***Լանկ Թամուրը***, իսկ 1526–ին՝ նրա թոռ Բաբուրը, որը, Հս. Հ–ի և Աֆղանստանի գրաված տարածքները միավորելով, ստեղծել է Մեծ Մողոլների կայսրությունը: XVIII դ–ում անգլիացիները նվաճել են Հ. և դարձրել իրենց գաղութը: Անգլիացիների տիրապետությունը տևել

է շուրջ 200 տարի: 1857–59-ի հակագաղութատիր. ապստամբությունը ճնշվել է: XIX դ-ի վերջին ազգ.-ազատագր. պայքարը գլխավորել է Հ-ի Ազգ. կոնգրեսը (ՀԱԿ)՝ Մ. *Գանդիի* գլխավորությամբ: 1947-ի օգոստ. 15-ին Հ-ի տարածքում առաջացել են 2 անկախ պետություններ՝ Հ. (հիմնականում՝ հնդու. բնակչությամբ) և Պակիստան (հիմնականում՝ մահմեդ. բնակչությամբ) դոմինիոնները: Անկախ Հ-ի վարչապետ է դարձել ՀԱԿ-ի առաջնորդ Ջ. *Նեհրուն*: 1947–49, 1965 և 1971-ին Հ-ի և Պակիստանի միջև տեղի են ունեցել պատերազմներ՝ Ջամու և Քաշմիր նահանգների համար: Երկրների միջև ներկայում էլ երբեմն տեղի են ունենում ռազմ. բախումներ: Անկախությունից հետո (1947–77, 1980–89, 1991–96-ին և 2004-ից) Հ-ում հիմնականում իշխանության ղեկին ՀԱԿ-ն է:

Առաջին հայ համայնքները Հ-ում ձևավորվել են XVI դ-ում, ապա ստվարացել XVII–XVIII դդ-ում (շուրջ 25 հզ. հայ, հիմնականում՝ Կալկաթա, Ագրա, Մադրաս, Բոմբեյ ք-ներում): Երկար ժամանակ երկրում ազդեցիկ դիրք են ունեցել հայազգի խոշոր վաճառականները. նրանց միջոցով է կատարվել առևտուրը Հ-ի և Ռուսաստանի, Իրանի, Թուրքիայի, Վենետիկի միջև: XVIII դ-ի վերջին և XIX դ-ի սկզբին հայկ. դպրոցներ են գործել հնդկահայ գրեթե բոլոր համայնքներում: Առավել նշանավորն ու երկարակյացը, որ գործում է ցայսօր, Կալկաթայի Հայոց մարդասիր. ճեմարանն է: Մադրասում և Կալկաթայում գործել են հայկ. տպարաններ: 1794-ին Մադրասում լույս է տեսել հայ. առաջին պարբ-ը՝ *«Ազդարար»* ամսագիրը (վերահրատարակվում է 2008-ից): Հայ իրականության մեջ սահմանադրության առաջին նախագիծը՝ «Որոգայթ փառացը», հրատարակվել է Մադրասում 1788–89-ին (տիտղոսաթերթի վրա՝ 1773): Հայերն այստեղ ստեղծել են քաղ., մշակութ., բարեգործ., մարզ. միություններ ու կազմ-յուններ: XX դ-ի սկզբից հնդկահայ գաղթավայրը նոսրացել է: Ներկայում Հ-ում բնակվում է մոտ 200 հայ՝ հիմնականում Կալկաթայում. գործում են Կալկաթայի Սբ Նազարեթ և Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները:

ՀՆԴԿԱՅԻՆՆԵՐ, Ամերիկայի բնիկ ժողդ-ները (բացառությամբ էսկիմոսների և ալեութների): Ընդհ. թվաքանակը՝ ավելի քան 30 մլն (2001), այդ թվում՝ Կանադայում՝ 608,9 հզ., խառնածինների հետ՝ 901,2 հզ., ԱՄՆ-ում՝ 2,5 մլն, խառնածինների հետ՝ 4,1 մլն (2000), Մեքսիկայում՝ 12 մլն (2005), Գվատեմալայում՝ 4,4 մլն (2009), Հոնդուրասում՝ 457 հզ. (2001), Նիկարագուայում՝ 311,4 հզ. (2005), Կոստա Ռիկայում՝ 63,9 հզ. (2000), Պանամայում՝ 244,9 հզ. (2000), Կոլումբիայում՝ 1,4 մլն (2005), Վենեսուելայում՝ 534,8 հզ. (2001), Էկվադորում՝ 3,5 մլն (2007), Բրազիլիայում՝ 734,1 հզ. (2000), Բոլիվիայում՝ 4,1 մլն (2001), Արգենտինայում՝ 402,9 հզ. (2001), Չիլիում՝ 687,5 հզ. (2002): Լատ. Ամերիկայում ապրող ժամանակակից խոշոր ժողդ-ներն են կեչուաները, այմարները, արաուկանները, հուանհիրոները, ացտեկները և ուր.: Լեզուն՝ հնդկացիների լեզուներ, նաև իսպ. և անգլ.: Կաթոլիկ են, բողոքական, տոհմացեղ. և ավանդ. պաշտամունքների հետևորդ:

ՀՆԴԿԱՅՈՐԵՆ (Fagopyrum), մատիտեղազգիների ընտանիքի միամյա, հազվադեպ՝ բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 4–5 տեսակ (2-ը՝ վայրի): Ցանովի կամ պարեն. Հ. մշակվում է հիմնականում եվրոպ. երկրներում: Միջին բերքատվությունը՝ 8–12, առլգն՝ 20–25 *գ/հա*:

ՀՆԴԿԵՂԵԳ, **բամբուկ** (Bambusak), հացազգիների ընտանիքի հնդկեղեգանմանների ենթաընտանիքի բազմամյա, սակավադեպ՝ միամյա բույս: Ցողունը փայտացած ծղոտե՝ հանգույցներով և միջհանգուց. տարածություններով: Բարձր.՝ մինչև 40 *մ*, տրամագիծը՝ 30 *սմ*: Հայտնի է շուրջ 1000 տեսակ (մոտ 70 ցեղ): Որոշ տեսակներ մշակվում են Սև ծովի ափերին: Թեթև և ամուր ցողուններն օգտագործում են կառույցների ու կահույքի պատրաստման համար:

ՀՆԴԿԵՂԵԳԱՅԻՆ ԱՓՋ, **մեծ պանդա**, ջրարջերի ընտանիքի կաթնասուն կենդանի: Մարմնի երկ.՝ մինչև 1,8 *մ*, պոչինը՝ մոտ 12 *սմ*: Ապրում է Չինաստանի լեռն. անտառներում: Մնվում է հիմնականում հնդկեղեգի երիտասարդ ընձյուղներով: Հազվագյուտ է, Չինաստանում ընդունվել է որպես ազգ. խորհրդանիշ: Պատկերված է նաև Բնության պահպանության համաշխ. հիմնադրամի խորհրդանշանի վրա: Անազատ պայմաններում բազմանում է դժվարությամբ: Գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՀՆԴԿՈՏԵՄ (Nasturtium), **ախրիզան, լեշկ ծաղիկ**, հնդկոտեմազգիների ընտանիքի խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 80 տեսակ՝ առավելապես՝ Հվ. Ամերիկայում: Որոշ տեսակների պալարներն օգտագործում են սննդի մեջ, կոկոններն ու պտուղները մարինացնում են: Մի քանի տեսակներ մշակում են որպես գեղազարդիչ:

ՀՆԴՈՍՄԱՆ, **Հնդկական թերակղզի**, թ-կղզի Ասիայի հվ-ում, մեծ մասն զբաղեցնում է Հնդկաստանը: Տարածքը՝ մոտ 2 մլն *կմ²*: Ողողվում է Արաբ. ծովի և Բենգալյան ծոցի ջրերով: Թ-կղզու մեծ մասն զբաղեցնում է Դեկանի սարահարթը (բարձր.՝ 300–900 *մ*)՝ պարփակված Արմ. և Արլ. Գաթերով: Կլիման՝ մերձարևադարձ., մուսսոն.: Գետերը (Նարբադա, Տապտի, Մահանադի, Գոդավարի) ունեն մուսսոն. ռեժիմ: Գաթերի լանջերին աճում են մշտադալար և սաղարթավոր անտառներ, ներքին շրջաններում կան սավաննաներ: Հվ-ում են Անամալայ (2695 *մ*) զանգվածները, Նիլ Գիրիր, Կարդամոնոլ-ները: Ափերի երկ-յամբ ձգվում են ալուվիալ դաշտավայրերը: Կան երկաթի, մանգանի հանքավայրեր:

ՀՆԴՈՒՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **հնդկաբանություն**, *Հնդստանի* ժողդ-ների պատմությունը, նրանց մշակութ. ժառանգությունը, աշխարհայացքը, գրկ-ը, արվ-ն ու լեզուները, տնտ., սոցիալ. և քաղ. հիմնախնդիրներն ուսումնասիրող ամբողջ. գիտ-յուն: *Արևելագիտության* բաժին է:

ՀՆԵՎԱՆՔ, ճարտ. համալիր ՀՀ Լոռու մարզի Կուրթան գ-ից արլ.՝ Զորագետի աջափնյա ձորում: Հնագույն եկեղեցին (VII դ.) ունի որմնակամարներով ութանիստ գմբեթ, Ավագ խորանի 2 կողմերում՝ ավանդատներ: XII–XIII դդ-ում գործել է որպես քաղկեդոն. վանք: Իվանե Օրբելյանի որդին 1154-ին վերանորոգել է գլխ. եկեղեցին, կառուցվել են գավիթն ու գմբեթավոր սրահը: Հ-ի միանավ եկեղեցուց պահպանվել են ստորին պատերի 2 շարքը և կիսաշրջանաձև խորանի հատվածը, կանգուն են նաև տնտ. շինությունները:

ՀՆԷԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **պալեոնտոլոգիա** (հուն.՝ palaiontologia), գիտ-յուն երկրբ. ժամանակաշրջանների օրգ. աշխարհի, նրա զարգացման օրինաչափությունների մասին՝ կապված երկրի զարգացման պատմության հետ: Ուսումնասիրում է ապարաշերտերի մեջ պահպանված օրգանիզմների բրածոները և դրանց կենսագործունեության հետքերը:

«ՀՆՉԱԿ», հաս.-քաղ. պարբերաթերթ (1887–1940, Ժնև, ապա՝ Աթենք, Լոնդոն, Փարիզ, Փրովիդենս, 1915–35-ին ընդհատվել է): ՍԴՀԿ պաշտոնաթերթ: Խմբ-ներ՝ Ավետիս Նազարբեկ, Ռուբեն Խանազատ, Գաբրիել Կաֆյան, Ստեփան Սապահ-Գյուլյան, Եղիա Սիրվարդ և ուր.:

«ՀՆՉԱԿԵԱՆ ՄԱՄՈՒԼ», քաղ., հաս., գիտ. և գր. կիսամսյա թերթ (1929–31, Փարիզ): ՍԴՀԿ պաշտոնաթերթ: Խմբ-ներ՝ Վահան Կեոքճյան, Բագրատ Սյունիք, Անդրանիկ Կենճյան:

ՀՆՉԱԿԱՅԱՆ ԿՈՒՄԱԿՅՈՒԹՅՈՒՆ, տես *Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն*:

ՀՆՉՅՈՒՆ, 1. (լեզվաբ.) բանավոր խոսքի նվազագույն միավորը, որը մարդու արտասան. բարդ գործունեության արդյունք է և ունի ձայնային ու խոսքի ընկալման հետ կապված որոշակի հատկություններ: Հարաբերակցվում է *հնչույթի* հետ: Ըստ արտասանության՝ բաժանվում է 2 դասի՝ ձայնավորների և բաղաձայնների: 2. **Հ. երաժշտական**, երգչաձայնի և երաժշտ. գործիքի հնչյունները, որոնք, որպես կանոն, ունենալով որոշակի բարձրություն (տատանումների հաճախության սահմանները՝ 16–4700 *Հց*) և որոշակի գեղ. որակ, մաս կազմելով այս կամ այն հնչյուն. համակարգի և ներգրավվելով երաժշտ. հյուսվածքում, ձեռք են բերում երաժշտ.-արտահայտչ. ֆունկցիա: Տես նաև *Բնական հնչյունաշար*, *Լարվածք երաժշտական*:

ՀՆՉՅՈՒՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, **հնչյունական գիր**, գրության տեսակ, որտեղ գրային նշանները (տառեր) արտահայտում են առանձին հնչյուններ: Հ. հայ., ռուս., եվրոպ. և այլ լեզուների այբուբենների հիմքն է: Հակադրվում է վանկ. գրին և գաղափարագրությանը: Հնագույն հնչյունագիրը փյունիկերենն է (մ. թ. ա. XIII դ.):

ՀՆՉՅՈՒՆԱՇԱՐ, 1. հնչյուն. որևէ համակարգի բոլոր հնչյունների կամ հիմն. աստիճանների վերընթաց կամ վարընթաց հաջորդականությունը: 2. Լադի բոլոր աստիճանների հաջորդականությունը (տես *Գամմա*): 3. Օբերտոնների հաջորդ. շարքը՝ սկսած հիմն. հնչյունից (տես *Բնական հնչյունաշար*): 4. Որևէ երաժշտ. գործիքի կամ երգչաձայնի կատարման համար մատչելի հնչյունների հաջորդ. շարքը (տես *Դիապազոն*):

ՀՆՉՅՈՒՆԱՎԵՐԱՐՏԱԴՐՈՒՄ, *հետախոսության*, *ռադիոընդունման*, հնչյուն. ֆիլմերի ցուցադրման ժամանակ մեխ. տատանումների և էլ. հոսանքների փոխակերպումը ձայնի: Իրականացվում է էլեկտրաձայն. եղանակով՝ հնչյունագիր-ձևափոխիչ-էլ. տատանումներ-ուժեղարար-բարձրախոս սխեմայով:

ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, լեզվի պատմ. զարգացման ընթացքում բառի հնչյուն. կազմի կրած փոփոխությունը: Տարբերում են Հ-յան փոխազդեցական (առնմանում, տարնմանում, դրափոխություն, հարմարեցում, համաբանություն,

ամփոփում), դիրքային (ռեդուկցիա, հավելում, հնչյունի կորուստ), ընդհ. պատմ. տեսակները:

ՀՆՉՈՒՅԹ, լեզվի նվազագույն միավորը. տարբերակում է լեզվի իմաստակիր միավորները (ձևույթներ, բառեր): Զուրկ է որևէ իմաստից, բայց նշում է բառիմաստի փոփոխությունը (ա-ն ինքնին որևէ իմաստ չունի, բայց տար–տեր զույգում նշում է բառիմաստի փոփոխությունը): Հ-ները տարրալուծվում են տարբերակիչ հատկանիշների, որոնք խոսքի մեջ ինքնուրույն գոյություն չունեն, այլ հանդես են գալիս մյուս հատկանիշների հետ:

ՀՆՉՈՒՆ ԿԻՆՈ, կինեմատոգրաֆիայի տեսակ, պատկերը խոսքով, երաժշտությամբ և ձայն. էֆեկտներով ուղեկցող կինոնկարների արտադր–յունն ու ցուցադրումը: Հ. կ-ի համակարգը գործել է XX դ-ի 2-րդ կեսից ԽՍՀՄ-ում, ԱՄՆ-ում, Գերմանիա-յում: Հայկ. առաջին հնչուն գեղ. ֆիլմը «Պեպո»-ն է (1935, ռեժ.՝ Հ. Բեկնազարյան):

ՀՈ ԿՅՈՒԻ ԼԻ (1335–1407), Վիետնամի թագավոր՝ 1400-ից, երկրի փաստ. կառավարիչը՝ 1378-ից: Իրականացրել է կենտր. իշխանության ուժեղացմանը միտված մի շարք բարենորոգումներ:

ՀՈ ՇԻ ՄԻՆ (1890–1969), վիետնամ. և միջազգ. կոմ. շարժման գործիչ: 1951-ից՝ Վիետնամի կոմկուսի ԿԿ նախագահ: 1946–69-ին՝ Վիետնամի Դեմոկրատ. Հանրապետության նախագահ, 1946–55-ին, միաժամանակ՝ վարչապետ:

ՀՈ ՄԻ (մոտ 1020–մոտ 1090), Սուն հարստության ժամանակաշրջանի չին նկարիչ, արվ–ի տեսաբան: Ստեղծել է վեհաշուք, միազույն լեռն. բնապատկերներ («Գյուղը բարձր լեռան վրա» ևն): Գեղանկարչության մասին աշխ-ում ձևակերպել է տարածության կառուցման հիմն. օրենքները չին. գեղանկարչության մեջ:

ՀՈ ՍՈՒԱՆ ՀԻՈՆԳ (XVIII դ-ի վերջ–XIX դ-ի սկիզբ), վիետնամցի բանաստեղծուհի: Համարվում է «վիետնամական պոեզիայի թագուհի»: Ստեղծել է չափածո փոքրածավալ գործեր («Գարնան բուրմունքը», ժող.):

ՀՈԲԱԼ (Columbaoenas), աղավնիների ընտանիքի թռչուն: Երկ.՝ 32–36 *սմ*: Նման է թխակապույտ աղավնուն: Հանդիպում է Եվրասիայում, Հս–արմ. Աֆրիկայում: Ապրում է անտառներում և այգիներում, բնադրում է փչակներում: Որսաթռչուն է:

ՀՈԲԱՐՏ (Hobart), ք. Ավստրալիայի Թասմանիա կղզում, նվիևգստ Խաղաղ օվկ-ում: Թասմանիա նահանգ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 200,5 հզ. (2006):

ՀՈԲԲԵՄԱ (Hobbema) Մեյնդերտ (1638–1709), հոլանդացի գեղանկարիչ: Բնանկարներն աչքի են ընկնում քնարականությամբ, դինամիկ կոմպոզիցիայով, բնապատկերի վավեր. կերպարով, հարուստ նրբերանգով ու հյութեղ կոլորիտով («Ճանապարհ անտառում», 1663, «Ծառուղի Միդդելհառնիսում», 1689, ևն):

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐ, 1. ըստ Հին կտակարանի՝ տարիներ, որոնք ամփոփում են յոթնամյա յոթ շրջափուլերը: Հ. տ-ում ավարտվել են ցանքն ու հունձքը, կարգադրվել է կորցրած հողատարածքները վերադարձնել իրենց սկզբնական տերերին և ազատ արձակել ստրուկներին: 2. Հռոմ. կաթոլիկ եկեղեցում 1300-ին Բոնիֆացիուս VIII պապի սահմանած՝ Եկեղեցու հարյուրամյա հոբելյանները: Հետագայում Հ. տ-ի միջև ժամկետները կրճատվել են մինչև 50, 33, 25 տարի: Հ. տ-ին Հռոմ գնացող ուխտագնացները մեղքերի թողություն են ստանում:

ՀՈԲՈՅ [ֆրանս.՝ hautbois – բարձր (բարձրահունչ) ծառ], **սրափող**, փայտե փողավոր լեզվակավոր երաժշտ. գործիք: Ստեղծվել է XVII դ-ի 2-րդ կեսին Ֆրանսիայում: Ընդգրկվում է սիմֆ. ու օպեր. նվագախմբերում, անսամբլներում ևն: Տարբերում են Հ-ի փոքր, հեկելֆոն, անգլ. եղջերափող, հոբոյ դամուր և այլ տեսակներ:

ՀՈԲՍ (Հովհաննես, ծ. թ. անհտ–1860-ական թթ.), ժող. առակախոս Լոռիում: Հ-ի անունով հայտնի զվարճախոսություններ հավաքել և 1903-ին Թիֆլիսում «Հորոս» վերնագրով լույս է ընծայել Երվանդ *Լալայանը*:

ՀՈԲՍ (Hobbes) Թոմաս (1588–1679), անգլիացի փիլ.: Հ-ի կարծիքով՝ հոմեոմերիան և մեխանիկան գիտ. մտածողության իդեալ. ձևեր են: Բնությունը ձգող. մարմինների ամբողջություն է, որոնք տարբերվում են մեծությամբ, ձևով, դիրքով և շարժմամբ (տեղափոխությամբ): Ըստ Հ-ի՝ պետությունը, որը նմանեցնում է առասպել. հրեշ *Լևիաթանին*, բնական վիճակի ավարտն է («բոլորը պատերազմում են բոլորի դեմ») և մարդկանց միջև պայմանագրի արդյունք: Հիմն. աշխ-ներից են՝ «Լևիաթան» (1651), «Փիլիսոփայության հիմունքներ» (1642–58):

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ, 1. **խնամակալություն**: 2. Տարբեր հաստատությունների (հատկապես՝ ուս., բարեգործ. ևն) կառավարման մարմին, որն իրականացնում է ֆին. մուտքերի և ծախսերի վերահսկողությունը: Հոգաբարձուների խորհուրդը որոշումներ է ընդունում միջոցների նպատակ. օգտագործման վերաբերյալ: ՀՀ-ում նման խորհուրդները ստեղծվել են անկախացումից հետո՝ օրենսդրությանը համապատասխան:

ՀՈԳԱՐԹ (Hogarth) Ուիլյամ (1697–1764), անգլիացի գեղանկարիչ, գրաֆիկ, արվ–ի տեսաբան: Երգիծ. կենցաղ. ժանրի («Անառակ կնոջ կարիերան», 1730–31, «Վատնողի կարիերան», 1732–35, նկարաշարեր, «Ընտրություններ», մոտ 1754, բոլորը՝ փորագրություն), բնութագր. ժանր. դիմանկարների («Ծովախեցգետիններով աղջիկը» ևն) վարպետ է: Հեղինակ է «Գեղեցկության վերլուծություն» (1753) աշխ-յան:

ՀՈԳԵԱՅ ՎԱՆՔ, *Հոգվոց վանք*, ճարտ. համալիր Վասպուրական նահանգ-ի Անձևացիք գվո-ում՝ Վանա լճից հվ՝ Կանգուար ամրոցի մերձակայքում: Վանք–ամրոց է՝ պաշտպ. երկշարք, 7–8 *մ* բարձր–յամբ պատերով: Գլխ.՝ Սբ Աստվածածին եկեղեցին միանավ գմբեթավոր դահլիճ է՝ արմ–ից կից գավթով:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գիտ–յուն մարդու և կենդանիների հոգեկան կյանքի օրինաչափությունների, մեխանիզմների և փաստերի մասին: Անտիկ և միջնադար. հոգեբ. մտքի հիմն. թեման հոգու խնդիրն էր (Արիստոտելի «Հոգու մասին»): XVII–XVIII դդ-ում մեխանիստ. փիլ-յան հիմքի վրա ձևավորվել է դետերմինիստ. մոտեցումը: XIX դ-ի կեսերին ծագել է փորձաբար. Հ. (հոգեֆիզիկա, հոգեֆիզիոլոգիա), 1870–80-ական թթ-ին ստեղծվել է Հ-յան հատուկ հասկացությունների, մեթոդների և կատեգորիաների համակարգ: Նորկանտականների գաղափարախոսության մեջ ծագել է «երկու հոգեբանությունների» դուալիստ. ըմբռնումը՝ բնագիտ. և մշակութապատմ.: Հ-յան XX դ-ի գլխ. հոսանքներն են՝ գեշտալտ Հ., *բիհեյվիորիզմ*, *հոգեվերլուծություն*, 1960-ական թթ-ին ձևավորվել են հումանիստ. Հ., կոգնիտիվ Հ.: Հ-ի ճյուղերից են հոգեֆիզիոլոգիան, զոոհոգեբ-յունը, սոցիալ. Հ., մանկ. Հ., հոգելեզվաբ-յունը, տարիք. Հ., բժշկ. Հ., նեոհոգեբ-յունը, հոգելեզվաբ-յունը, էթնիկ. Հ. ևն:

Հայ հոգեբ. միտքը զարգացել է V դ-ից (Եզնիկ Կողբացի, Դավիթ Անհաղթ): Հոգեբ. խնդիրներ են արծարծել Գրիգոր Նարեկացին, Ֆրիկը, Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, Հովհաննես Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին և ուր., XIX դ-ում՝ Հ. Ստեփանյանը, Մ. Բժշկյանը, Ս. Նազարյանը, սոցիալ–հոգեբ. խնդիրներին է անդրադարձել Մ. Նալբանդյանը: Առաջին հոգեբ. երկը Ս. Նազարյանի «Յաղագս փորձնական հոգեբանության ճառ» (1851) աշխ-ն է: Հայաստանում Հ., որպես ինքնուրույն գիտ-յուն, զարգացել է 1920–30-ական թթ-ից, երբ ձևավորվել է փորձարար. մանկավարժ. Հ. (Գ. Էդիլյան և ուր.): 1940-ական թթ-ից ստեղծվել են Հ-յան ամբիոններ և գիտ. լաբորատորիաներ: Հ-յան հիմնախնդիրներ են քննարկել Մ. Մազմանյանը, Ա. Կոստանյանը, Հ. Թութունջյանը, Է. Միլերյանը, Ա. Նալչաջյանը, Ա. Լալայանը, Ս. Աղզումանյանը և ուր.:

«ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՅԱՆՔԸ», գիտ. հանդես (2000-ից, Երևան): «Տաթև» գիտակրթ. համալիրի հրտ-յուն: Գլխ. խմբ.՝ Սոկրատ Մկրտչյան:

ՀՈԳԵԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, *փսիխիատրիա* (< հուն. psychikos – հոգեկան և iatreia – բուժում), կլինիկ. բժշկագիտ-յան բնագավառ. ուսումնասիրում է հոգեկան հիվանդությունների դրսևորումները, պատճառներն ու զարգացման մեխանիզմները, մշակում բուժման, կանխարգելման և հոգեկան հիվանդներին օգնություն կազմակերպելու մեթոդներ: Ձևավորվել է XVIII դ-ի վերջ–XIX դ-ի սկզբին: Զարգացման ընթացքում Հ-ից առանձնացել են մանկ. Հ., դատ. Հ., թմրաբանությունը (նարկոլոգիա) և այլ գիտաճյուղեր:

ՀՈԳԵԳԱԼՍՏՅԱՆ ՏՈՆ (Հիսունք, Տերունի տոն), 1. քրիստ. տոն, նշվում է Սբ Հոգու իջման: 2. Հուդայականության 3 մեծ տոներից (Շավուոտ), նշվում է *Պեսախից* 50 օր անց՝ ի պատիվ Սինա սարի վրա հրեաներին Աստծուց՝ տասնաբանյա օրենքի (*Թորա*) շնորհման:

ՀՈԳԵԹԵՐԱՊԻԱ, հիվանդի վրա հոգեկան ազդեցություն (բառի, արարքի, իրադրության միջոցով)՝ բուժման նպատակով: Տարբերակում են բանական (ռացիոնալ) Հ. կամ բացատրում, ներշնչում (արթմնի վիճակում կամ հիպնոսի ժամանակ), ինքնաներշնչանք (աուտոգեն վարժանք) ևն:

ՀՈԳԵԽԹԱՆԻՉ ԴԵՂԱՆՅՈՒԹԵՐ, *փսիխոստիմուլյատորներ*, դեղանյութեր, որոնք խթանում են ԿՆՀ-ի ֆունկցիան, առաջին հերթին՝ բարձրագույն նյարդ. գործունեությունը, և ժամանակավորապես՝ մտավոր և ֆիզ. աշխատունակությունը:

ՀՈԳԵԿԱՆԸ, հոգեկան (գիտակցական և անգիտակցական) գործընթացների և երևույթների (զգայություններ, ընկալումներ, ապրումներ, հիշողություն ևն) ամբողջությունը: Սերտ կապի մեջ է մարմնային (սոմատիկ) գործընթացների հետ, բնորոշվում է ակտիվությամբ, ամբողջականությամբ, աշխարհի հետ փոխհարաբերությամբ (տես *Ինտենցիա*),

զարգացմամբ, ինքնակարգավորմամբ, հարմարվողականությամբ ևն: Գիտակցությունը Հ–ի բարձրագույն ձևն է (զուտ մարդկային): Հ–ի խնդիրներով զբաղվել է բոլոր դարերի փիլ. միտքը, որպես ինքնուրույն գիտ–յուն՝ ուսումնասիրվել, համակարգվել և ձևավորվել է XIX դ–ում:

ՀՈԳԵԿԱՆ ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆ, հոգեվիճակ, աֆեկտ (իրավաբ.), որը նվազեցնում է անհատի գործողությունների գիտակցման կամ դրանց կառավարման ունակությունը: Քր. իրավունքում ուժեղ Հ. ա., որն ի հայտ է եկել տուժածի ոչ օրինաչափ գործողությունների հետևանքով, համարվում է մեղմացուցիչ հանգամանք:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ, հանգուցյալի հոգու հանգստյան համար կատարվող եկեղեց. արարողություն: Հայերի մոտ ընդունված է Հ–ի արարողություն կատարել հուղարկավորման նախորդ երեկոյան, նաև մահվան 7–րդ, 40–րդ օրերին, տարելիցին, կրոն. նշանավոր տոներին: Քաղաքաց. Հ–ի ընթացքում տեղի է ունենում սգո հավաք, հանգուցյալի դագաղի մոտ կարգվում է պատվո պահակ:

ՀՈԳԵՄԱՐՏԻՆՆԵՐ (ռուս.՝ духоборы), տես *Դոխոբորներ*:

ՀՈԳԵՎԱՆՔ, ճարտ. համալիր ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուր գ–ից 3 *կմ* հս–արմ.: Գլխ.՝ Սբ Կարապետ եկեղեցին (1205) գմբեթավոր դահլիճ է՝ Ավագ խորանի 2 կողմում ուղղանկյուն, թաղածածկ ավանդատներով: Նրանից մոտ 50 *մ* հս պահպանվել են միանավ (V դ.) և քառակոնք (VII դ.) եկեղեցիների որմերի մնացորդներ:

ՀՈԳԵՎԱՐՔ, ագոնիա (հուն.՝ agonia – պայքար), կյանքի՝ կլինիկ. մահվանը նախորդող պահերը: Հ–ի և կլինիկ. մահվան մի շարք դեպքերում առաջացած փոփոխությունները դարձելի են, որով էլ պայմանավորված է վերակենդանացումը:

ՀՈԳԵՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, *հոգեթերապիայի* մեթոդ և հոգեր. ուսմունք. զարգացրել է Ջ. *Ֆրեյդը* XIX դ–ի վերջ–XX դ–ի սկզբին, հիմքում հոգեկան անգիտակցական գործընթացներն ու շարժառիթներն են: Հոգեթերապիայի հիմքում ազատ զուգադրման (ասոցիացիա) օգնությամբ դուրս մղված բարդույթների, երազների մեկնաբանությունների ևնի վերլուծությունն է: Ըստ Հ–յան՝ հոգեկերտվածքի մասերի փոխհարաբերությունների խախտումները կարող են պատճառել հոգեկան հիվանդություններ: Որոշակի ազդեցություն է թողել գրկ–յան, արվեստաբանության և այլ հումանիտար ոլորտների վրա:

ՀՈԳԵՎՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, հոգևոր (պաշտամունք.) բովանդակության վոկալ և վոկալ–գործիք. երաժշտ. ստեղծագործությունների հավաք. անվանումը: Բազմազան ժանրերով ու ձևերով արվ.: Եկեղեց. արարողության հետ հաճախ անմիջական կապ չունի, թեև կարող է կատարվել նաև եկեղեցում, երբեմն նույնացվում է բուն եկեղեց. երաժշտության հետ: Մասնագիտացված Հ. ե–յան մեջ կարևոր դեր են կատարել մեսսան, ռեքվիեմը, պասսիոնը, օրատորիան, մոտետը, կանտատը:

Հայ իրականության մեջ մինչև XIX դ–ի վերջը Հ. ե. գոյատևել է մոնոդիկ կերտվածքով (արարող. երգեր, տաղեր, մեղեդիներ, գանձեր, պարզապես հոգևոր երգեր ևն): Նշանավոր հեղինակներից են *Ներսես Շնորհալին*, *Գրիգոր Նարեկացին* և ուր.: Հոգևոր բազմաձայն ա կապելլա երկեր են ստեղծել Մ. Եկմալյանը, Գ. Սյունին, Կոմիտասը և ուր.:

«ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ», մշակութ. ամսաթերթ (2004–15, Երևան): ՀԱԳ–ի պաշտոնաթերթ: Խմբ–ներ՝ Դավիթ Սարգսյան, Մանուկ Սուրադյան, Վաղեն Ալեքսանյան:


ՀՈԳԵՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, պատրաստում են հոգևոր սպասավորներ, տալիս են աստվածաբան. կրթություն: Լինում են բարձրագույն (աստվածաբան. ակադեմիա, համալսարան, ճեմարան ևն), միջին (հոգևոր սեմինարիա, քոլեջ, լիցեյ, մեդրեսե, իեշիվա ևն), տարրական (թեմ. դպրոց, մահմեդ. մեկտեբ, հուդայական խեդեր ևն): Հայտնի բարձրագույն Հ. ու. ի–ից են Վատիկանի, Սալամանկայի (Իսպանիա) պապ. համալսարանները, Վատիկանում՝ Աստվածաբանության պապ. ինստ–ը: ՀՀ–ում հոգևոր ուս. հաստատություններ են *Գևորգյան ճեմարանը*, *Վազգենյան դպրանոցը*, *Հառիճի ընծայարանը*:

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, քրիստոնեության մեջ անձիք, որոնք կատարում են հաս. և մասնավոր ժամերգություն: Հ–յան շարքին են դասում հոգևոր սպասավորներին (ձեռնադրված եպս., քհն. ևն) և եկեղեցու սպասավորներին (չձեռնադրվածներ, որոնք օգնում են ժամերգության կատարմանը, օր.՝ ընթերցողներ): Հ–յան առաջն. խնդիրներից են կրոն. գիտելիքների տարածումը, վստահված հոտի բարոյական վիճակի խնամքը, սնոտիահավատության վերացումը: Վաղ միջնադարում Եվրոպայում Հ. ձևավորվել է որպես հատուկ համաձայնություն և պահպանել է այդ կարգավիճակը մինչև Նոր շրջան: *Ուղղափառության* և *կաթոլիկության* մեջ հոգևորական կարող են լինել միայն տղամարդիկ: *Բողոքականության* մեջ Հ–յան և աշխարհականների խիստ տարանջատում չկա: Ուղղափառության մեջ տարբերում են «սպիտակ» (ծխական) և «սև» (կուսակրոնություն) Հ.: Լայն իմաստով Հ. ասելով՝ նկատի ունեն անձանց, որոնք մասնագիտորեն զբաղվում են պաշտամունքի և այլ կրոնների տարածմամբ:

ՀՈԳԻ (Haughey) Չառլզ Ջեյմս (1925–2006), Իռլանդիայի վարչապետ՝ 1979–81, 1982–ին, 1987–92–ին՝ «Ֆիաննա Ֆայլ» կուսյան առաջնորդ (1979–ից՝ նախագահ): 1961–79–ին զբաղեցրել է տարբեր նախարար. պաշտոններ:

ՀՈԳԻ, հասկացություն, որն արտահայտում է մարդու և կենդանիների հոգեկան կյանքի մասին պատմականորեն փոփոխվող պատկերացումները: Հիմքում հնագույն պատկերացումներն են մարդու և կենդանու (երբեմն՝ բույսի) մեջ զետեղված յուրահատուկ ուժի մասին, որը լքում է նրան քնի կամ մահվան ժամանակ (*մեդիտևիզմ*): Տիեզերքի համընդհանուր շնչավորության գաղափարները (*հիլոզոիզմ*, *պանսպսիխիզմ*) դարձել են *համաշխարհային հոգու* մասին ուսմունքի հիմք (*Պլատոն*, *նորպլատոնականություն*): Ըստ Արիստոտելի՝ Հ. կենդանի մարմնի նպատակահարմար սկիզբ է՝ «ձև», որը նրանից անբաժան է: Թեհիստ. կրոններում մարդու Հ. Աստծու ստեղծած անկրկնելի, անմահ հոգևոր սկիզբ է: Պանթեիստ. ավեռոիզմում Հ. միասնական հոգևոր սուբստանցիայի (մոնոպսիխիզմ) անհատ. դրսևորում է: Դեկարտի դուալիստ. մետաֆիզիկայում Հ. և մարմինը բաժանված են որպես 2 ինքնուրույն սուբստանցիաներ, որոնց փոխհարաբերության հարցը քննարկվում է հոգեֆիզ. խնդրակարգի շրջանակներում:

ՀՈԴ, 1. (անատոմ.) ոսկրերի միացություն, որը թույլ է տալիս ոսկրերի շարժումը միմյանց նկատմամբ: Հ–ի հիմն. տարրերն են հոդավորվող ոսկրերի աճառածածկ մակերեսները, հեղուկով լցված հոդախոռոչը, խոռոչը մեկուսացնող հոդակապը: Հ–ի օժանդակ գոյացություններն են կապանները, մահիկները, սկավառակները, ձուսպապարկերը և այլ կառուցվածքներ:



Հասարակ հոդի սխեմայական պատկերը.
ա – 1. ոսկրածուծային խոռոչ, 2. ծուսպապաղանթ, 3. հոդախոռոչ, 4. հոդաճաո, 5. հոդապարյան, 6. ոսկրի սպունգանման նյութ, 7. վերնոսկր, 8. ոսկրի հոծ նյութ
բ – մարդու կոնքազդրային հոդի ճակատային կտրվածքը. 1. մեծ ոլորի գլխիկը, 2. հոդաճաո, 3. անանուն (կոնքային) ոսկր, 4. հոդախոռոչ, 5. ազդրոսկրի գլխիկի կապան, 6. հոդափոսի լայնական կապան, 7. հոդապարյան, 8. շրջանաձև գոտի հոդապարյանի ներսում (գրկում է ազդրոսկրի վզիկը), 9. ազդրոսկրի գլխիկի շուրթ (մեծացնում է հոդափոսի խորությունը)

2. (Լեզվբ.) սպասարկու բառ (մասնիկ). դրվում է գոյականի վրա և արտահայտում որոշյալի, անորոշի, սեռի, թվի, հոլովի և այլ քերական. կարգեր (անգլ.՝ the, a, ֆրանս.՝ le, la, les, un, une, des ևն): Հայ–ում Հ–երը (ը, ն, մի, ս, դ) արտահայտում են որոշյալություն, անորոշություն, ստացականություն, դիմորոշություն, ցուցականություն:

ՀՈԴԱԲՈՐԲ, արթրիտ (լատ.՝ arthritis, < հուն. arthron – *հոդ*), հոդերի բորբոք. և բորբոքասնուցախանգարումային, իսկ լայն իմաստով՝ հոդերի ցանկացած հիվանդության հավաքական անվանումը: Ըստ ընթացքի լինում է՝ սուր և քրոնիկ, մեկ հոդի կամ մի քանի հոդերի բորբոքման (բազմահոդաբորբ) ձևերով: Պատճառները՝ վարակիչ հիվանդությունները (տուբերկուլոզ, բրուցելոզ ևն), նյութափոխանակության խանգարումները (օր.՝ պոդագրայի դեպքում), վնասվածքները ևն:

ՀՈԴԱԽՈՒՏՈՒՄ, ոսկրերի հոդային ծայրերի տեղաշարժում՝ նրանց բնականոն շարժողության սահմաններից դուրս: Երբեմն ուղեկցվում է հոդապարկի և կապանների պատռումով և հոդապարկից մեկ կամ մի քանի ոսկրերի հոդային ծայրերի դուրս գալով: Առաջանում է հոդերի վնասվածքների և հիվանդությունների հետևանքով:


ՀՈԴԱԿԱՊ, 1. (լեզվաբ.) բառակազմ. ձևույթ (հնչյուն): Հայ–ում որպես Հ. օգտագործվում է ա (մարդ–ա–սեր, շոգի–ա–քարշ > շոգեքարշ ևն), ռուս–ում՝ о, е, լատ–ում՝ i, u ձայնավորները, գերմ–ում՝ s, n բաղաձայնները:

2. (Տեխ.) մեխանիզմի 2 մասերի շարժ. միացություն, որը մասերից մեկին հնարավորություն է տալիս պտտվելու մյուսի շուրջը:

ՀՈԴԼԵՐ (Hodler) Ֆերդինանդ (1853–1918), շվեյցարացի գեղանկարիչ: Հեղինակ

է խորհրդանշ. նկարների՝ տոգորված գծային խոր ռիթմերով («Գիշեր», 1890), որմնանկարների («Նահանջ Մարինիա-նոյի մոտ», 1898–1900):

ՀՈԴՈԳՐԱՖ մեխանիկայում (< հուն. hodos – ուղի, ճանապարհ և ...*գրաֆ*), նույնանկենտրոն փոփոխ. վեկտորի ծայրակետերի երկրչփ. տեղը ներկայացնող կոր: Հասկացությունը ներմուծել է Ու. *Համիլտոնը*: Հ. երկրչփ. պատկերացում է տալիս վեկտորով պատկերվող ֆիզ. մեծության՝ ժամանակի ընթացքում փոփոխության և այդ փոփոխության արագության (ունի Հ–ի շոշափողի ուղղություն) մասին:



ՀՈԴՎԱԾՈՏԱՆԻՆԵՐ, արթրոպոդներ (Arthropoda), ամենաբազմազան և լայնորեն տարածված անողնաշար կենդանիների տիպ: Հայտնի են շուրջ 1,5 մլն ջր. և ցամաք. մակաբույծ տեսակներ, ՀՀ–ում՝ 5830: Մարմինը հատվածավոր է՝ ամուր խիտինային ծածկույթով: Կան ազատ ապրող և մակաբույծ ձևեր: Առանձնացնում են 4 ենթատիպ՝ տրիլոբիտներ (բրածոներ), խոխկաշունչներ, խելիցերայիններ և տրաքեաշունչներ (ներառյալ միջատները):

ՀՈԹԱ Յոսիե (1918–1998), ճապոնացի գրող: Հեղինակ է հակառազմամոլ. թեմայով «Փոթորկվող ծովի խորքից» (1960–61), Հիրոսիմայի ողբերգությանը վերաբերող «Դատաստան» (1960–63), «Տեսիլք կամուրջի վրա» (1970), «Գոյա» (գիրք 1–4, 1974–77), նաև սոցիալ–հոգեբ. վեպերի:

ՀՈԹՈՌՆ (Hawthorne) Նաթանիել (1804–1864), ամերիկացի գրող: Հեղինակ է «Կրկնակի պատմված պատմություններ» (1837), «Հին դաստակերտի լեգենդները» (1846) հոգեբ. և այլաբան. վիպակների ու պատմվածքների ժող–ների, «Ալ տառը» (1850), «Մարմարե այծամարդը» (1860) և այլ վեպերի:

ՀՈԼԱՅ, տես *Գիրոսկոպ*:

ՀՈԼԱՆԴԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ 1672–78, Ֆրանսիայի (պատերազմի հրահրողը, հանդես է եկել Անգլիայի՝ մինչև 1674–ը, և Շվեդիայի հետ դաշնակցած) և Հոլանդիայի (1673–74–ից՝ Հռոմ. սրբազան կայսրության, Իսպանիայի, Դանիայի հետ դաշնակցած) միջև: Պատերազմի վերջում Ֆրանսիան մի շարք անհաջողություններ է կրել, սակայն Նիմվեգենի հաշտության պայմանագրերով (1678–79) կարողացել է իրեն բռնակցել մի շարք տարածքներ (այդ թվում՝ Ֆրանշ–Կոնտեն՝ Իսպանիայից) և պահպանել իր առաջատարությունը Եվրոպայում:

ՀՈԼԱՆԴԱԿԱՆ ՏԱՎԱՐ, կաթնատու ցեղ: Բուծվել է Հոլանդիայում: Գույնը՝ խայտաճամուկ: Յուլերի կ. զ.՝ 900–1000, կովերինը՝ 550–600 *կգ*: Տարեկան միջին կաթնատվությունը՝ 4500 *կգ* (ռեկորդ.՝ 13 հզ. *կգ*): Տարածված է Նիդեռլանդներում, Գերմանիայում, ԱՄՆ–ում, Մեծ Բրիտանիայում, ՌԴ–ում և այլուր:

ՀՈԼԱՆԴԱՑԻՆԵՐ (նիդեռլանդացիներ), ժողդ, Նիդեռլանդների հիմն. բնակչությունը: Ընդհ. թվաքանակը՝ 25–28 մլն, Նիդեռլանդներում՝ 16,9 մլն (2015): Լեզուն՝ նիդեռլ.: Հավատացյալները բողոքական են, կան նաև կաթոլիկներ:

ՀՈԼԱՆԴԵՐԵՆ, նիդեռլանդերեն, *հոլանդացիների* լեզուն, Հոլանդիայի (Նիդեռլանդներ) պետ. լեզուն, Բելգիայի պետ. լեզուներից: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի գերմ. ճյուղի արևմտագերմ. խմբին: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՀՈԼԱՆՏԱՐԿՏԻԿԱԿԱՆ ԲՈՒՄԱԿԱՆ ԹԱՓԱՎՈՐԹՅՈՒՆ (< հուն. holos – ամբողջ, anti – հակառակ և arktikos – հյուսիսային), ներառում է Հվ. կիսագնդի ցուրտ, բարեխառն և մասամբ՝ մերձարևադարձ. շրջանները (Անտարկտիդան և հարակից կղզիները, Հրո Երկիրը, Արմ. Պատագոնիան): Ժամանակակից բուսականությունը շատ աղքատ է (շուրջ 2000 տեսակ), աչքի է ընկնում որոշակի բնաշխարհիկությամբ (10 բնաշխարհիկ ընտանիքներ): Բնորոշ են մամուռներն ու քարաքոսերը (գլխավորապես՝ Անտարկտիդայում), անտարկտիկ. հաճարենիները, շքածառերը, որոշ պտերներ (Հվ. Ամերիկայում), մրտենու թփուտները, հավամրգազգիները (հիմնականում՝ կղզիներում):

ՀՈԼԲԱԽ (Holbach) Պոլ Հենրիխ (1723–1789), գերմանացի փիլ.: Ակտիվորեն մասնակցել է Դ. Դիդրոյի և Ժ. Լ. դ'Ալամբերի «Հանրագիտարան...»–ի ստեղծմանը: Հ. համակարգել է XVIII դ–ի ֆրանսիացի մատերիալիստների հայացքները («Բնության համակարգը», 1770):

ՀՈԼԲԱՅՆ (Holbein) Հանս **Կրտսեր** (մոտ 1497/98–1543), գերմանացի գեղանկարիչ, գրաֆիկ: Վերածննդի շրջանի խոշոր ներկայացուցիչ: Հեղինակ է հստակ բնութագրումների ճշտությամբ դիմանկարների (գեղանկարչ., գրաֆիկ.), կրոն. թեմաներով պատկերների, փորագրությունների, Վերածնության արվ–ի պարզությամբ և վեհությամբ մոնումենտալ կոմպոզիցիաների («Մեռած Քրիստոսը», 1521–22, ևն):

ՀՈԼԲԵՐԳ (Holberg) Լյուդվիգ (1684–1754), նորվեգացի դրամատուրգ, պատմաբան, փիլ.: Ապրել է Դանիայում: Սկանդ. Լուսավորականության խոշորագույն գործիչ: Դանիական և նորվեգ. ժամանակակից գրկ–ների հիմնադիրը: Հեղինակ է «Լեռնցի Յեպսեն» (1722), «Էրազմուս Մոնտանուս» (1723) կատակերգությունների, «Պետեր Պորս» (հ. 1–4, 1719–20) երգիծ. պոեմի, «Նիկոլայ Կլիմի ստորգետնյա ճամփորդությունը» (1741) երգիծ. վեպի, որտեղ ծաղրել է եվրոպ. բարքերը, նախապաշարումները ևն, նաև առակների և այլ գործերի:

ՀՈԼԴԵՅՆ (Haldane), անգլիացի գիտնականներ, հայր և որդի: 1. **Ջոն Սքոթ Հ.** (1860–1936), ֆիզիոլոգ: Լոնդոնի թագավոր. ընկ–յան անդամ (1897): Աշխ–ները վերաբերում են շնչառության ֆիզիոլոգիային, մասնավորապես՝ շնչառության կարգավորման մեջ ածխածնի երկօքսիդի դերին, շնչառության և արյան շրջանառության կապին, գազափոխանակությանը: Առաջարկել է կեսոնային հիվանդության կանխարգելման հիմունքները: 2. **Ջոն Բյորդոն Սանդերսոն Հ.** (1892–1964), կենսաբան, գենետիկ: ԽՍՀՄ (1942) և մի շարք այլ երկրների ԳԱ–ների պատվ. անդամ: 1957–61–ին ապրել է Հնդկաստանում: Պոպուլացիայի, մաթ., մոլ. և կենսաքիմ., ժամանակակից գենետիկայի և էվոլյուցիայի սինթետիկ տեսության հիմնադիրներից:

ՀՈԼԻՎՈՒԴ (Hollywood, < անգլ. holly – փշարմավ և wood – անտառ), շրջան Լոս Անջելեսում (ԱՄՆ), կինո–, հեռուստա– և տեսաերիզների արդ–յան կենտրոն: Մինչև 1950–ական թթ. Հ–ում կենտրոնացված էր ամերիկ. կինոարտադր–յան հիմն. մասը (առաջատար կինոստուդիաներից են՝ «Paramount Pictures», «Universal», «United Artists», «Warner Brothers», «Metro–Goldwyn–Mayer», «Columbia Pictures», «20th Century Fox»): Հետագայում հեռուստատեսության զարգացումը, հակամենաշնորհ. օրենսդրության կիրառումը, արտադր–յան արտահանումն արտերկիր հանգեցրել են կինոարտադր–յան ապակենտրոնացման և վերածել ֆինանսավարձութ. կազմ–յունների: «Հ.» անվանումն ԱՄՆ–ի կինեմատոգրաֆիայի հոմանիշ է:

ՀՈԼԼ (Hall) Ասաֆ (Էսաֆ, 1829–1907), ամերիկացի աստղագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1880): Որոշել է *Սատուռնի* պտտման պարբերությունը (1876), հայտնաբերել (1877) *Մարսի* արբանյակները:

ՀՈԼԼ Էդվին Հերբերտ (1855–1938), ամերիկացի ֆիզիկոս: Հետազոտել է ջերմաէլ., գալվանա– և ջերմամագնիս. երևույթները հաղորդիչներում: Հայտնաբերել է հեոտագայում իր անունով կոչված էֆեկտը (*Հոլլի էֆեկտ*): Տես *նաև Հոլլի տվիչ, Հոլլի քվանտային էֆեկտ*:

ՀՈԼԼ Ջոն Լյուիս (ծ. 1934), ամերիկացի ֆիզիկոս: Աշխ–ները վերաբերում են քվանտ. ֆիզիկային, լազեր. սպեկտրադիտմանը: Մշակել է (Թ. *Հենշի* հետ) հաճախության օպտիկ. ստանդարտներում լուս. շեղման (այսպես կոչված օպտիկ. հաճախական. սանր) ճշգրիտ հաշվարկման մեթոդ:

Նոբելյան մրց. (2005, Թ. Հենշի հետ):

ՀՈԼԼԱՆԴ (Holland) Ագնեշկա (ծ. 1948), լեհ կինոռեժ.: Կոշտ վավերագրականությունը համադրել է քնար. կատակերգության տարրերի հետ («Ինչ–որ բան՝ ինչ–որ բանի համար», 1977, «Գավառական դերասաններ», 1978, ևն): 1980–ական թթ–ից աշխատում է ԱՄՆ–ում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում և այլուր: Նկարահանել է նաև «Սպանել քայնձին» (1988), «Լրիվ խավարում» (1995), «Ընդօրինակելով Բեթհովենին» (2006) ևն: Հեղինակ է Ա. Վայդայի մի քանի ֆիլմերի սցենարների:

ՀՈԼԼԱՆԴ Ջոն Ֆիլիպ (1840–1914), ամերիկացի կոնստրուկտոր: Ստեղծել է առաջին սուզանավը («Հոլլանդ»), որը 1900–ի ապրիլին սպառազինության է վերցվել ԱՄՆ ՌԾՆ–ում:

ՀՈԼԼԻ (Holley) Ռոբերտ Ուիլյամ (1922–1993), ամերիկացի կենսաքիմիկոս: Հետազոտել է նուկլեինաթթուների կառուցվածքը: Առաջինն է հաստատել նուկլեոտիդների և ալանինային փոխադրող ՌՆԹ–ի լրիվ հաջորդականությունը:

Նոբելյան մրց. (Մ. Ու. *Նիրենբերգի* և Հ. Գ. *Կորանայի* հետ):

ՀՈԼԼԻ ԷՖԵԿՏ, $\vec{H}$ լարվածության մագնիս. դաշտում տեղադրված $\vec{i}$ հոսանքի խտության հոսանքակիր հաղորդչում $\vec{H}$–ին և $\vec{i}$–ին ուղղահայաց ուղղված էլ. դաշտի (Հոլլի դաշտ) առաջացումը: Դաշտի լարվածությունը՝ $E_H = RjHsin\alpha$, որտեղ α–ն $\vec{H}$–ի և $\vec{i}$–ի միջև անկյունն է, R–ը՝ Հոլլի հաստատունը և կախված է հիմնականում լիցքակիրների նշանից և խտությունից: Հայտնաբերել է Է. Գ. Հոլլը 1879–ին:

ՀՈԼԼԻ ՔՎԱՆՏԱՅԻՆ ԷՖԵԿՏ (ֆիզ.), մակրոսկոպիկ. քվանտ. էֆեկտ. դիտվում է ցածր ջերմաստիճաններում կիսահա-

ղորդչի մակերևութ. բարակ շերտում, երբ կիսահաղորդիչը դրված է նրա մակերևութ. շերտին ուղղահայաց ուժեղ ***մագնիսական դաշտում***: Այդ դեպքում ***Հոլլի էֆեկտով*** պայմանավորված դիմադրությունը շերտի հարթության մեջ ընդունում է $2\pi\hbar/ne^2$ դիսկրետ արժեքներ (n–ը ամբողջ կամ կոտորակ. ռացիոնալ թիվ է, ħ–ը՝ Պլանկի հաստատունը, e–ն՝ էլեկտրոնի լիցքը), իսկ ուղղահայաց ուղղությամբ 0 է: Հ. ք. է. կարելի է օգտագործել ħ/e հարաբերությունը որոշելու, նաև էլ. դիմադրության միավորը՝ Օմ–ը վերարտադրելու համար: Հայտնաբերել է Կ. ֆոն ***Կլիտցինգը*** (1980) Գ. Դորդայի և Պեփերի հետ:

ՀՈԼՄԻՈՒՄ (Holmium), Ho, տարրերի պարբեր. համակարգի III խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 67, ա. զ.՝ 164,9304, լանթանիդ է: Անվանումը՝ լատ. Holmia – Ստոկհոլմ բառից: Արծաթասպիտակավուն մետաղ է, խտ.՝ 8,80 $q/uմ^3$, $t_{հալ.}$՝ 32°C–1470°C: Հ. և նրա միացությունները կիրառվում են մագնիսներ պատրաստելու, ապակին, հախճապակին և ճենապակին դեղին ներկելու համար, լյումինաֆորների ակտիվարար է:


ՀՈԼՄՍ (Holmes) Արթուր (1890–1965), անգլիացի երկրաբան–քարագետ: Ռադիոերկրը–յան առաջին գիտնականներից: Աշակել է ֆաներոզոյի (ժամանակի միջակայք) 1–ին երկրաժամանակագր. սանդղակը:

ՀՈԼՄՍ Օլիվեր Ուենդել (1809–1894), ամերիկացի գրող, գիտնական–բժիշկ: Կրոն. անհանդուրժողականության քննադատ: Հեղինակ է «Հրեշտակ–պահապանը» (1867), «Առավոտյան ճաշկերույթի ինքնակալը» (1858) էսսեների ժող–ների, երգիծ. և հայրենասիր. բանաստեղծությունների, հուշերի: Որոշ տվյալներով՝ Ա. Կոնան Դոյլի հերոսի՝ Շեռլոկ Հոլմսի նախատիպն է:

ՀՈԼՄՍԹՐՅՈՄ (Holmstryom) Բենգթ (ծ. 1949), ֆինն տնտեսագետ: Միջազգ. «Տնտեսագիտական ընկերության» նախագահ (2011): Աշխ–ները վերաբերում են պայմանագրերի տեսությանը:

Նոբելյան մրց. (2016, Օ. ***Հարթի*** հետ):

ՀՈԼՈԳՐԱՖԻԱ (< հուն. holos – ամբողջ և ...***գրաֆիա***), ալիքների ***ինտերֆերենցիայի*** երևույթի վրա հիմնված օբյեկտի ծավալ. պատկերների ստացման մեթոդ: Լուսազգայուն մակերևույթի վրա սևեռված պատկերը կոչվում է **հոլոգրամ**: Հ–ի կամ նրա մի մասի ճառագայթումով հենքային ճառագայթով հնարավորություն է տալիս դիտելու օբյեկտի ծավալը, պատկերը: Հ–ի գաղափարը տվել է Դ. ***Գաբորը*** (1948, Նոբելյան մրց.՝ 1971): Հ–ի էությունը հիմնված է ***Հյուգենս–Ֆրենելի սկզբունքի*** վրա: Կիրառելի է բոլոր տեսակների ալիքների և հաճախությունների ցանկացած տիրույթի համար: Օգտագործվում է ֆիզիկայում և տեխնիկայի տարբեր բնագավառներում:



Հոլոգրամի գրանցման (ա) և ալիքային ճակատի վերականգնման (բ) սխեմաներ.
1. լազեր,
2. փնջերի ընդարձակիչ,
3. հայելի,
4. օբյեկտ,
5. հոլոգրամ,
6. կեղծ պատկեր,
7. իրական պատկեր,
8. դիտորդ

ՀՈԼՈՇԻ Շիմոն (Սիմոն, 1857–1918), հունգարահայ նկարիչ: Հունգ. կերպարվ–ի ավանդույթները հարստացնելով արևմտաեվրոպ. պլեներային գեղանկարչության նվաճումներով՝ ստեղծել է ժող. կյանքի պատկերներ, հեղ. թեմայով գործեր («Եգիպտացորենի կեղևահանումը», 1885, «Դրոշակակիրը», 1890–ական թթ., «Ռակոցիի երթը» նկարի էսքիզները, 1890–1910–ական թթ., բոլորը՝ Հունգարիայի ազգ. պատկերասրահ, Բուդապեշտ):

ՀՈԼՈՎ, թեք. և կցական լեզուներում անուն խոսքի մասերին (գոյական, ածական, թվական) և դերանուններին հատուկ քերական. կարգ. դրսևորվում է բառի վերջավորություններով, հիմքի հերթագայությամբ (հոլով. թեքույթ), այդ երկուսի, նաև նախդիրների զուգակցմամբ: Հայ–ում տարբերակում են 7 (որոշ լեզվաբաններ՝ 5 կամ 6) Հ. (ուղղ., սեռ., տր., հայց., բացառ., գործ., ներգոյական):

ՀՈԼՈՎԱԿ, 1. (տեխ.) հարթ կամ ակոսավոր մակերևույթով գլանաձև, կոնաձև, տակառաձև մեքենամաս: 2. (Էլ.) բաց հոսանքագծերում էլ. հաղորդալարերի ամրացման համար օգտագործվող ճենապակե մեկուսիչ: 3. Կարճամետրաժ (հիմնականում՝ գովազդ.) ֆիլմ:

ՀՈԼՈՎՈՒՄ, թեք. և կցական լեզուներում անուն խոսքի մասերի և դերանունների փոփոխությունը՝ ըստ ***հոլովների***: Հ–ման մեջ դրսևորվում են հոլովի, թվի, դասի, առկայացման, դեմքի, որոշ լեզուներում՝ սեռի քերական. կարգերը: Հայ–ում տարբերում են Հ–ման անվան. (գրքի–գրքից–գրքով–գրքում) և դերանվան. (ես–իմ–ինձ), ներքին (ա, ո) և արտաքին (ի, ու, ան, ոջ, վա, ց) տեսակներ:

ՀՈԼՈՔՈՍՏ (անգլ.՝ holocaust – ողջակիզում), նեղ իմաստով՝ Եվրոպայի հրեա բնակչության մեծ մասի (6 մլն մարդ, 60 %–ից ավելի) ոչնչացումը 1933–45–ին Գերմանիայում և նրա գրաված տարածքներում: Լայն իմաստով՝ ֆաշիստ. Գերմանիայի կազմակերպած էթնիկ. (գնչուներ, լեհեր, սերբեր ևն) և տարբեր սոցիալ. խմբերի զանգված. հետապնդումներն ու կոտորածները ԵՀՊ–ի ժամանակ:

ՀՈԼՈՒՅ (Holuj) Թադեուշ (1916–1985), լեհ գրող: Հեղինակ է «Թագավորությունն առանց հողի» (հ. 1–4, 1954–56) պատմ. դյուցազներգության, «Անհատը» (1974) և այլ վիպակների, «Վարդերը և հուրհրացող անտառը» (1974) և այլ վեպերի:

ՀՈՈ (Hooch, Hoogh) Պիտեր դե (1629–1684), հոլանդացի գեղանկարիչ: Պատկերել է կանանց և երեխաների առօրյա զբաղմունքն արևոտ սենյակներում ու բակերում («Փոքրիկ բակ», 1658, ևն):

ՀՈՒՀՈՒԹ (Hochhuth) Ռոլֆ (ծ. 1931), գերմանացի գրող: 1963–ից՝ Շվեյցարիայում: Հեղինակ է «Փոխարքան» (1963), «Զինվորները» (1967) վավերագր–պատմ. դրամաների, «Լիսիտրատոսը ՆԱՏՕ–ի կատակերգության մեջ» (1974) և այլ քաղ. կատակերգությունների, «Մանկաբարձուհին» (1971), «Բժիշկները» (1980) սոցիալ–քննադատ. պիեսների, «Սերը Գերմանիայում» (1978) հակաազգայն. վեպի, «Իրավաբանները» (1979) պիեսի, «Հայլ, Հիտլեր» (2004) տրագիկոմեդիայի:

ՀՈՒՎԵԼԴԵՐ (Hochwälder) Ֆրից (1911–1986), ավստրիացի դրամատուրգ: Հեղինակ է «Սրբազան փորձ» (1947), «Ազնվամորի հավաքողը» (1965), «Հրաման» (1967) հակաֆաշիստ. թեմաներով պիեսների, «Աքրքայադուստր Հիմայան» (1982) գրոտեսկային կատակերգություն–ֆանտազիայի, «Քաղաքացիներ» (1984) անտիկ թեմայով սատիրայի:

ՀՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ՄԵԽԱՆԻԿԱ, ***մեխանիկայի*** բաժին. ուսումնասիրում է գազերի, հեղուկների և դեֆորմացվող պինդ մարմինների շարժումներն ու հավասարակշռությունը: Հ. մ. մ–ում նյութը դիտարկվում է որպես անընդհատ հոծ միջավայր, իսկ նրա մոլ. (ատոմ.) կառուցվածքն անտեսվում է: Հ. մ. մ–ի հիմն. բաժիններն են հիդրոմեխանիկան (**հեղուկամեխանիկա**), աերոմեխանիկան (**գազամեխանիկան**), առաձգականության և պլաստիկության տեսությունը, սրրուն միջավայրերի մեխանիկան:

ՀՈԿԱՅԴՈ, մեծությամբ 2–րդ կղզին Ճապոն. կղզեխմբի հս–ում: Տարածքը՝ 83,5 հզ. $կմ^2$, բն.՝ 5,5 մլն (2010): Ռելիեֆը հիմնականում լեռնային է, բարձր.՝ մինչև 2290 *մ* (Ասախի լ.): Կան գործող հրաբուխներ: Տարածքի 60 %–ն զբաղեցնում են ասեղնատերև անտառները: Աշակում են բրինձ, հացահատիկ. բույսեր: Զարգացած է ձկնորսությունը: Գլխ. քաղաքներն են Սապպորոն, Հակոդատը ևն:

ՀՈԿԵՅ (անգլ.՝ hockey, հավանաբար՝ հին ֆրանս. hoquet – հովվի ցուպ՝ կեռով), մականներով և գնդակով կամ տափօղակով թիմ. մարզախաղ, որի նպատակն է առավել թվով գնդակներ անցկացնել հակառակորդի դարպասը: Դոյություն ունի Հ–ի 4 հիմն. տեսակներ՝ **տափօղակով** և **գնդակով Հ.** (Հ. սառույցի վրա), **գնդակով Հ.** (խոտի Հ.), **անվաչմուշկներով Հ.**:

ՀՈԿԿՈՒ, ***հայկու***, ճապոն. պոեզիայի ժանր, չհանգավորված 17–վանկանի (5–7–5) եռատող: Բանաստեղծ. լեզուն պարզ է, շարադրանքը՝ ազատ: Հիմնադիրը ***Սնացուո Բասյոն*** է:

ՀՈԿՈՆ IV, **Հոկոն Ծեր** (Haakon den Gamle, 1204–1263), Նորվեգիայի թագավոր՝ 1217–ից: Ուժեղացրել է թագավոր. իշխանությունը: 1251–ին սահման. հարցերի կարգավորման վերաբերյալ պայմանագիր է կնքել Նովգորոդի հետ:

ՀՈԿՈՆ VII (1872–1957), Նորվեգիայի թագավոր՝ 1905–ից՝ Գլյուքսբուրգների հարստությունից: Ընտրվել է շվեդա–նորվեգ. ունիայի (1814–1905) փլուզումից և անկախ նորվեգ. թագավորության ստեղծումից հետո: Գերմանիայի՝ Նորվեգիայի նվաճման տարիներին (1940–45) եղել է Մեծ Բրիտանիայում:

«ՀՈԿՏԵՄԲԵՐ», գր–գեղ. կիսամյա ժող. (1927, 1930–33, Թիֆլիս): Վրաստանի պրոլետգրողների ընկերակցության հայկ. մասնաճյուղի հրտ–յուն: Խմբ.՝ Վարդան Ատրյան:

«ՀՈԿՏԵՄԲԵՐ», գր., մշակութ., երիտասարդ. պարբերաթերթ (1974–80, Կահիրե):

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՋԻՆՎԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ, 1. **Մոսկվայում**, բանվորների և կայազորի հեղ. զինվորների ապստամբությունը Մոսկվայի բոլշևիկ. կազմ–յան ղեկավարությամբ 1917–ի հոկտ. 25–նոյեմբ. 2 (նոյեմբ. 7–15)–ին: 2. **Պետրոգրադում**, բանվորների, կայազորի հեղ. զինվորների և Բալթիական նավատորմի նավաստիների ապստամբությունը՝ բոլշևիկյան կուսյան ղեկավարությամբ 1917–ի հոկտ. 24–25

(նոյեմբ. 6–7)-ին: Ավարտվել են խորհրդ. իշխանության հաստատումով:

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԱԴՈՒԼ 1905, համընդհ. գործադուլ Ռուսաստանում՝ 1905–07-ի հեղ-յան ընթացքում: Սկսվել է հոկտ. 7-ին (ՌՄԴԲԿ Մոսկվայի կոմիտեի որոշմամբ)՝ Մոսկվայի երկթղ. հանգույցի աշխատավորների գործադուլով և մինչև հոկտ. 13-ն ընդգրկել է երկրի հիմն. արդ. կենտրոնները (մոտ 2 մլն մարդ): Գործադուլն ընթացել է ինքնակալությունը տապալելու, Բուլիգինյան դուման բոյկոտելու, Սահմանադիր ժողով հրավիրելու և ժողովրդավար. հանրապետություն հռչակելու կարգախոսներով: Գործադուլի ընթացքում ստեղծվել են բանվորների պատգամավորների խորհուրդներ, արհմիություններ: Հոկտ. 17-ին հռչակվել է ցար. մանիֆեստը (տես ***Մանիֆեստ 1905 հոկտեմբերի 17-ի***), որով Նիկոլայ II-ը ժողդ-ին «շնորհում էր» խոսքի, ժողովների և միությունների ազատություն, անձի անձեռնմխելիություն: Մինչև հոկտ. 25-ը գործադուլը հիմնականում դադարեցվել է:

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ 1917 Ռուսաստանում, զինված հեղ-յուն, որով տապալվել է Ժամանակավոր կառ-յունը՝ իշխանության բերելով բոլշևիկներին, երկրում հայտարարվել է խորհրդ. կարգերի հաստատման և կապիտալիզմից սոցիալիզմի անցնելու մասին: Հոկտ. 24-ի լույս 25-ի (նոյեմբ. 6–7) գիշերը Պետրոգրադի կայազորի զինվորները, Բալթիական նավատորմի նավաստիները և զինված բանվորները գրավել են Ձմեռ. պալատը և ձերբակալել Ժամանակավոր կառ-յան անդամներին: Հոկտ. 25-ին Պետրոգրադում բանվորների և զինվորների Խորհուրդների համառուսաստանյան II համագումարն ընդունել է հողի և հաշտության մասին դեկրետները և ստեղծել խորհրդ. 1-ին իշխանությունը՝ Ժողկոմխորհը՝ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ: 1918-ի հունվ. 5 (18)-ին ցրվել է ժողդ-ի ընտրած Սահմանադիր ժողովը (նոյեմբ. 12 (24)-ի ընտրություններում նրանք ստացել էին ձայների ընդամենը 25 %-ը): Մինչև 1918-ի մարտն ազգայնացվել են երկրի բանկերն ու գործարանները, հաշտություն է կնքվել Գերմանիայի հետ, որով Ռուսաստանը դուրս է եկել պատերազմից: Սկզբում ճնշել են Ժամանակավոր կառ-յանը հավատարիմ ուժերի դիմադրությունը, իրենց իշխանությունը հաստատել Ռուսաստանի եվրոպ. մասի նինգ-ներում, իսկ Քաղաքաց. պատերազմում (1917–22) հաղթելուց հետո՝ նախկին Ռուս. կայսրության մեծ մասում, և երկրից դուրս մղել նաև ինտերվենտների զինված ուժերը:

«ՀՈԿՏԵՄԲԵՐ–ՆՈՅԵՄԲԵՐ», գրկ-յան, արվ-ի, գիտ-յան և տնտ-յան տարեգիրք (1932, Երևան): Պատ. խմբ.՝ Եղիշե Չարենց, խմբ-ներ՝ Ակսել Բակունց, Եղիա Չուբար: Հրատարակել է Հայպետհրատը՝ Հոկտ. հեղ-յան 15-ամյակի և Հայաստանի խորհրդայնացման 12-րդ տարեդարձի առթիվ:

ՀՈԿՈՒՍԱՅ Կացուսիկա (1760–1849), ճապոնացի գրաֆիկ, գունավոր փայտափորագրության վարպետ: Գործերին բնորոշ են ռեալիստ. որոշակիությունը, դինամիկ. գծանկարը, հագեցված մաքուր գույներ, անսպասելի գունահամադրումը ևն («Ճուճի լեռան 36 տեսարանները», շարք, գունավոր, 1823–31, «Ճանապարհորդություն տարբեր գավառների ջրվեժներով», շարք, 1827–33, ևն): Ձևավորել է ավելի քան 500 գիրք:

ՀՈՀԵՆԼՈԵ (Hohenlohe) Խլոդվիգ Կառլ (իշխան Շիլլինգսֆյուրստ, 1819–1901), Գերմանիայի ռայխսկանցլեր և Պրուսիայի նախարար-նախագահ՝ 1894–1900-ին: Հ-ի կառ-յունն սկսել է հզոր ռազմածով. նավատորմի շին-յունը:

ՀՈՀՈՒԱ, գոհուա (չին. – ազգ. գեղանկարչություն), չին. ավանդ. գեղանկարչության տեսակ. ստեղծվում է ջրաներկով՝ մետաքսի կամ թղթի վրա (հաճախ՝ գեղագիր մակագրությամբ): «Հ.» տերմինը երևան է եկել XIX–XX դդ-ի սահմանագլխին՝ որպես հակակշիռ յուհուային՝ «յուդաներկային» (կամ սիյանհուային՝ արմ.) գեղանկարչության:

ՀՈՂ, յուրահատուկ բնապատմ. գոյացություն, որը կազմված է գենետիկորեն կապակցված հորիզոններից, որոնք ձևավորվել են երկրակեղևի մակերեսային շերտերի փոփոխման հետևանքով՝ մի շարք բնական գործոնների՝ կլիմայի, ռելիեֆի, երկրի հասակի, ինչպես նաև մարդու տնտ. գործունեության հետևանքով: Բնութագրվում է բերրիությամբ (տես ***Հողի բերրիություն***): Բաղկացած է պինդ, հեղուկ, գազանման և կենդանի (հողի ֆաունա և ֆլորա) մասերից: Ստորաբաժանվում են տունդր., պոդզոլային, ճահճ., մարգագետնաճահճ., անտառ. սևահողեր, շագանակագույն, գորշանտառատափաստան., ալկալի, աղուտ և գենետիկ. այլ տիպերի:

ՀՈՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ, ԱԳՐՈՔԻՄԻԱՅԻ ԵՎ ՄԵԼԻՈՐԱՅԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ Հրանտ Պետրոսյանի անվան (2003-ից), ՀԱԱՀ-ի: Կազմակերպվել է 1998-ին՝ Հողագիտ-յան և ագրոքիմիայի ԳՀԻ-ի (հիմն.՝ 1958) հիմքի վրա՝ ՀՀ ԳՆ կազմում, 2012-ից՝ ՀԱԱՀ-ի մասնաճյուղ: Զբաղվում է հողերի ծագումնաաշխարհագր., դասակարգման ու անվանացանկի, տեղաբաշխվածության օրինաչափությունների բացահայտման, հողբարելավման, բերրիության բարձրացման և այլ խնդիրներով: Տնօրեններ՝ Հ. Պետրոսյան, Հունան Ղազարյան (1988-ից):

ՀՈՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գիտ-յուն հողերի ծագման, կառուցվածքի, կազմության ու հատկությունների, աշխարհագր. տեղաբաշխվածության, ադյունավետ օգտագործման մասին: Ուսումնասիրում է հողը՝ որպես առանձնահատուկ բնական գոյացություն և արտադր-յան միջոց: ՀՀ-ում Հ-յան զարգացման ոլորտում զգալի ներդրում ունեն Բոգդան Գալստյանը, Խաչիկ Միրիմանյանը, Աշոտ Չիթչյանը, Հարություն Սմբատյանը, Հրանտ Պետրոսյանը և ուր.:

ՀՈՂԱԹԱՓԻԿ, պարամեցիում, հավասարթաթարթչավոր ինֆուզորիաների ենթադասի նախակենդանիների ընտանիք: Երկ.՝ մինչև 0,3 *մմ*: Հայտնի է մոտ 15 տեսակ: Քաղցրահամ, աղիավուն ջրերի ազատ լողացող օրգանիզմներ են: Օգտագործում են լաբորատոր հետազոտություններում:

ՀՈՂԱԼԿԱԼԻԱԿԱՆ ՄԵՏԱՂՆԵՐ, տարրերի պարբեր. համակարգի II խմբի գլխ. ենթախմբի քիմ. տարրերը՝ բերիլիումը (Be), մագնեզիումը (Mg), կալցիումը (Ca), ստրոնցիումը (Sr), բարիումը (Ba), ռադիումը (Ra), որոնց օքսիդները (ալքիմիկոսների տերմինաբանությամբ՝ «հողերը») ջրին հաղորդում են ալկալիական ռեակցիա:


ՀՈՂԱԼՎԻԿՆԵՐ, տերևակերների ընտանիքի բզեզներ: Բազմաթիվ գղտ. բույսերի վնասատուներ են: Հայտնի է մոտ 5 հզ. տեսակ: Խաչածաղկավորների լվիկները կաղամբազգիների ընտանիքի բույսերի ծիլերի ամենավտանգավոր վնասատուներն են: Հաճախ են հանդիպում նաև սպիտակատ, ակոսավոր, ալիքավոր, կապույտ, սև և խաչածաղկավորների հվ. լվիկները: Հացազգիների լվիկները հասկավոր հացարույսերի վնասատուներ են: Ճակնդեղի վնասատուներից են ճակնդեղի սովոր. և հվ. լվիկները, կանեփի և կտավատի վնասատուներից՝ բզեզներն ու թրթուրները:

ՀՈՂԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ, կարգավորում է հողի սեփականության և գույք. այլ իրավունքների առաջացումն ու իրականացումը, հողի շրջանառության առանձնահատկությունները, հողօգտագործման կարգը և պայմանները: ՀՀ-ում Հ. ի-ի աղբյուրներն են ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քաղաքաց. օրենսգիրքը, ՀՀ հող. օրենսգիրքը և այլ օրենքներ, պետ. կառավարման ու ընդունած նորմատիվ-իրավ. ակտերը:

ՀՈՂԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ, երկրի մակերևույթի վրա հողերի տարածվածությունը, դրանց առանձնահատկություններն ու հատկություններն արտացոլող քարտեզներ: Ստորաբաժանվում են ընդհ., հողային-մելիորատիվ, հողային-էրոզիոն տեսակների: ՀՀ-ում Հ. ք. ստեղծվել են Հողագիտ-յան, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտ. կենտրոնում:

ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ ՀՀ, ընդունվել է 2001-ին: Սահմանում է հող. հարաբերությունների պետ. կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպաիրավ. ձևերի զարգացման, հողի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպ-յան իրավ. հիմքերը ևն:

ՀՈՂԱՊԱՍՏԱՌ, արհեստականորեն հարթեցված հողաշերտերի (թույլատրելի թեքվածքներով) տեսքով գրունտ. կառուցվածք, որը ծառայում է որպես հիմք երկթղ. ճանապարհների վերին շինության և ավտոճանապարհ. պատվածքի համար: Հ-ի հետ անմիջականորեն կապված են լիրքի առափերը, առուները, հողակույտերը, ջրահեռացման առուները, ցամաքուրդ. սարքավորումները, պաշտպանող. կառույցները ևն:



ՀՈՂԱՏԻՊՈՒԹՅՈՒՆ, հողի անհատ. կամ կոլեկտիվ սեփականատրման պատմ. ձև: Յուրաքանչյուր հաս-տնտ. հասարակարգում Հ-յան ձևերից առանձնացվում է առավել բնորոշ ու տիրապետող ձևը: Հ-յան նախն. ձևը համայնականն էր, որը բնորոշ էր նախնադար. համայն. հասարակարգին: Աշխ-ի բաժանման, զարգացման և փոխանակության ծագման հետ առաջացել է մասնավոր Հ.: ՀՀ-ում ընդունված են Հ-յան հետևյալ ձևերը՝ ՀՀ քաղաքացիների սեփականություն, կոլեկտիվ սեփականություն, պետ. սեփականություն և այլ պետությունների սեփականություն:

ՀՈՂԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, հողագիտ-յան բաժին. ուսումնասիրում է հողերի ձևավորման ու տարածման օրինաչափությունները: Բաժանվում է ընդհ. և տարածաշրջ. մասերի: ՀՀ-ում Հ. ա-յան զարգացմանը մեծապես նպաստել են Բ. Գալստյանը, Ա. Չիթչյանը, Խ. Միրիմանյանը, Ռ. Էդիլյանը և ուր.:

ՀՈՂԻ ԹԹՎԱՅՆՈՒԹՅՈՒՆ, հողի հատկություն. պայմանավորված է հողի ջր. լուծույթում, ինչպես նաև հողի կլանող համալիրում ջրածնի և ալյումինի փոխանակային իոնների առկայությամբ: Բարձր Հ. թ. չեզոքացնում են կրայնացմամբ:

ՀՈՂԻ ԼՈՒԾՈՒՆՈՒԹ, հողի հեղուկ ֆազ՝ նրանում լուծված գազերի, անօրգ. և օրգ. միացությունների հետ, որոնք ջրի մեջ են թափանցում մթն-ից և ներծծվում հող. հորիզոններից՝ մազանոթ., ձգող. (գրավիտաց.), թաղանթ. (շարժվում են ծանրության ուժի ներգործությունից) ձևերով:

ՀՈՂԻ ՀԱՄՈՒՆՈՒԹՅՈՒՆ, հողի վիճակ. ցույց է տալիս նրա մշակման (ֆիզ. հասունություն) կամ ցանքի և բույսերի տնկման (կենսբ. հասունություն) համար պատրաստ լինելը:

ՀՈՂԻ ՀԱՐԿ, հողի դիմաց սահմանված չափերով ու ժամկետներում համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ, որը կախված չէ հարկ վճարողների տնտ. գործունեության արդյունքներից: ՀՀ-ում գործում է 1994-ից:

ՀՈՂԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ, **հողի բոնիտում**, հողերի համեմատ. գնահատումը՝ ըստ նրա ագրոնոմ. հատկանիշների: Բերրիությունը բնութագրող որակ. ցուցանիշներից բացի՝ հողը գնահատելիս հաշվի են առնում նաև գղտ. արտադր-յան վրա ներգործող բնական այլ գործոններ՝ ռելիեֆը, խոնավությունը, միկրոկլիման և ն:

ՀՈՂԻ ՊՐՈՖԻԼ, մակերեսից մինչև մայրական ապարները հողի ուղղաձիգ կտրվածքը, որը կազմված է հողառաջացման շարժընթացներում ձևավորված գենետիկ. փոխադարձ կապերով կապված և օրինաչափորեն հերթափոխվող հողի հորիզոններից ու ենթահորիզոններից:

ՀՈՂԻ ՌԵԱԿՑԻԱ, հողի ֆիզքիմ. հատկությունը, որը պայմանավորված է հողի պինդ և հեղուկ մասերում H^+ և OH^- իոնների պարունակությամբ: Եթե հողում գերակշռում են H^+իոնները, ապա Հ. ռ. թթվային է, իսկ OH^- իոնների գերակշռության դեպքում՝ հիմնային, հավասարության դեպքում՝ չեզոք: Տես նաև *Հողի թթվայնություն*:

ՀՈՂԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, հողօգտագործման ձև, երբ հողի սեփականատերն իր հողամասը պայմանագրով, փոխհատուցմամբ (վարձավճարով) հանձնում է այլ անձի (վարձակալին): Հ. վ. կարգավորվում է հող. օրենսգրքով, իրականացնում են համապատասխան լիազոր, տարածք. կառավարման մարմինները և ՏԻՄ-ները: Պետության և համայնքների սեփականության հողերը վարձակալության են տրվում մինչև 99 տարի ժամկետով՝ բացառությամբ գղտ. նշանակության հողերի, որոնց վարձակալության ժամկետը սահմանվում է մինչև 25 տարի: ՀՀ-ում կարգավորվում է ՀՀ հող. օրենսգրքով (2001):

ՀՈՂԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ, հողի՝ որպես արտադր-յան միջոցի և բնական հարստության, համեմատ. և բացարձակ արժեքորոշում՝ նրա բնական ու տնտ. բերքատվության (բերրիության), հողամասի տեղադրության և այլ պայմանների հիման վրա: Իրականացվում է հողի որակ. գնահատման ժամանակ և կազմում է հող. կադաստրի բաղկացուցիչ մասը: Հ. տ. գ. նախատեսված է ՀՀ հող. օրենսգրքով (2001):

ՀՈՂՄԱԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ, քամու հոսքի կինետիկ էներգիան էլեկտրաէներգիայի փոխակերպող *էլեկտրակայան*: Կառուցվում են քամու բարենպաստ ռեժիմով (քամու տարեկան միջին արագությունը՝ 5 *մ/վ*) և կենտրոնացված էլեկտրամատակարարման ցանցերից հեռու գյուղ. վայրերում՝ որպես ոչ մեծ հզորության էներգիայի աղբյուր: ՀՀ-ում գործում է 1 Հ.՝ Պուշկինի լ-անցքում՝ 264 *ՄՎտ* հզորությամբ (4 հողմակով): Տես նաև *Հողմաէներգետիկա*:

ՀՈՂՄԱԷՆԵՐԳԵՏԻԿԱ, *էներգետիկայի* բնագավառ. մշակում է քամու էներգիայի օգտագործման տես. հիմունքները, մեթոդներն ու միջոցները՝ մեխ., էլ., ջերմ. էներգիա ստանալու համար: Քամու էներգիան կարող է օգտագործվել ամենուրեք, սակայն առավել հեռանկարային է այն տնտ-յան մեջ օգտագործելը: ՀՀ Հ-ի նե-րուժը գնահատվում է 5000 *ՄՎտ*:

ՀՈՂՄԱՆԵՄՈՒԿ (Anemone), **հողմավարդ**, գորտնուկազգիների (հրանունկազգիներ) ընտանիքի բազմամյա կոճղարմատավոր խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 90 (այլ տվյալներով՝ 150) տեսակ, ՀՀ-ում՝ 5՝ գորտնուկանման, կովկաս., փնջավոր, անհարթ և գեղեցիկ՝ տարածված գրեթե բոլոր մարզերում: 2 տեսակ պահպանվում է:

ՀՈՂՄԱԿՈՂՄ ԿՂԶԻՆԵՐ, **Կարիբյան կղզիներ**, հրաբխ. կղզիների խումբ Վեստ Ինդիայում՝ Փոքր Անթիլյան կղզիների արլ-ում: Տարածքը՝ 6 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,7 մլն (2009): Կղզում են մի շարք անկախ պետություններ, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Նիդեռլանդների տիրույթները: Խոշոր կղզիներն են Գվադելուպան, Մարտինիկան, Դոմինիկան, Սենտ Լյուսիան, Սենտ Վինսենտը, Գրենադան, Անտիգուան: Ունի լեռն. մակերևույթ (բարձր.՝ մինչև 1586 *մ*, Դոմինիկա կղզում): Խոշոր ք-ներն են Ֆոր դը Ֆրանսը, Պուենտ ա Պիտրը և Բաս Տերը:

ՀՈՂՄԱՀԱՐՈՒՄ, 1. ապարների քայքայման և փոփոխման շարժընթաց Երկրի մակերևութին՝ մեխ., քիմ. և օրգ. գործոնների ազդեցությամբ: Տարբերում են ֆիզ., քիմ. և օրգ. Հ-ման յուրահատուկ տիպ է հողառաջացումը: Հ-ման շարժընթացները հանգեցնում են տարբեր նստվածք. ապարների և բազմաթիվ հանքավայրերի առաջացման: 2. **Հ. հանքավայրերի**, օգտ. հանածոների հանքաշերտեր, որոնք առաջացել են Երկրի մակերևույթին՝ լեռն. ապարների քայքայման ժամանակ ջրի, ածխածնի երկօքսիդի, թթվածնի, ինչպես նաև օրգ. և անօրգ. նյութերի ազդեցությամբ: Այդպիսիք են Fe-ի, Mn-ի, S-ի, Ni-ի, բոքսիտների, ապատիտի, բարիտի հանքավայրերը:

ՀՈՂՄԱՂԱՑ, քամու ուժով աշխատող աղաց: Առաջին Հ-ներն ի հայտ են եկել 2000 տարի առաջ Չինաստանում և եղել են մարդու ստեղծած առաջին մեխ. շարժիչները:

ՀՈՂՄԱՎԱՐ ԲԱՋԵՆԵՐ, *բազեների* ընտանիքի գիշատիչ թռչունների սեռ: Երկ.՝ 31–38 *սմ*: Հայտնի է ավելի քան 10 տեսակ՝ Եվրասիայում, Աֆրիկայում, Ամերիկայում, Ռուսաստանում, ՀՀ-ում՝ 2՝ սովոր. և տափաստան. Հ. բ.: Փորձեր են արվել Հ. բ. օգտագործել որպես բազեորս, սակայն՝ անօգուտ (այստեղից՝ «հողմավար» անվանումը): Ոչնչացնում են վնասակար կրծողներին (դաշտամկներ, մկներ, առնետներ), նաև մորեխներին: 2 տեսակ գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՀՈՂՄԱՏԱԿ ԿՂԶԻՆԵՐ, **Հարավանթիլյան կղզիներ**, Փոքր Անթիլյան կղզիների հվ. մասը Կարիբյան ծովում: Բաղկացած են Արուբա, Կյուրասաո, Բոնայտե, Ավես, Լոս Ռոկես, Օրչիլա, Բլանկիլիա և Լոս Էրմանոս կղզիներից: Տարածքը՝ 1200 *կմ*^{2}, բն.՝ 900 հզ. (2009): Մեծ մասն ունի հրաբխ. ծագում, ծածկված են չոր անտառներով և թփուտներով: Աշակում են սորգո, բատատ, բանան:

ՀՈՄԱՆԻԾՆԵՐ, ձևով՝ տարբեր, իմաստով՝ մոտ կամ նման բառեր (բառաձևեր): Տարբերում են Հ-ի բառ. (մազ–հեր–վարսծամ), քերական. (եր–ներ–ք–ենք, սեղա–նին–սեղանի վրա, լավ է–վատ չէ, ինչու ես հուզվում–մի՛ հուզվիր), բառաքերական. (դանդաղաշարժ–դանդաղ շարժվող), նաև նույնանիշ (վիզ–պարանոց) և համանիշ (ծիծաղել–հռհռալ) տեսակները:

ՀՈՄԵՈ... (հուն.՝ homoios – նման, միանման), բարդ բառերի սկզբնամաս. նշանակում է՝ նման, միատեսակ (օր.՝ ***հոմեոտրազ***, ***հոմեոպաթիա***):

ՀՈՄԵՈՄԵՐԻԱ, (հուն.՝ homoiomereia – նմանամասնություն), հինհուն. փիլ-յան հասկացություն: Հ., ըստ ***Անաքսագորասի***, որակապես միասեռ և ինքնատիպ այն մասնիկն է, որը բաղկացած է անվերջ քանակությամբ ավելի փոքր մասնիկներից: ***Արիստոտելը*** հոմեոմերիկ է անվանել որակապես միասեռ գոյացությունները, որոնց յուրաքանչյուր մասնիկն իր հատկություններով նման է մյուսներին և ամբողջին (օր.՝ օրգ. հյուսվածքներ, մետաղներ, միատարր հանքանյութեր ևն):

ՀՈՄԵՈՊԱԹԻԱ, **նմանաբուժություն**, բուժման համակարգ, որը հիմնվում է «նմանը բուժվում է նմանով» սկզբունքի վրա, համաձայն որի՝ հիվանդության բուժման ժամանակ չնչին չափաքանակներով կիրառում են դեղանյութեր, որոնց մեծ քանակներն առաջացնում են բուժվող հիվանդության ախտանշաններին նման երևույթներ: Առաջարկել է գերմանացի բժիշկ Ս. *Հանեմանը* 1796-ին:

ՀՈՄԵՈՍՏԱԶ (< *հոմեո*... և հուն.՝ stasis – անշարժություն, վիճակ) **ֆիզիոլոգիա-յում**, օրգանիզմի ներքին միջավայրի բաղադրության ու հատկությունների հարաբեր. հաստատունության և հիմն. ֆիզիոլոգ. ֆունկցիաների կայունության վիճակ: «Հ.» հասկացությունը կիրառում են նաև ***կենսահամակեցություն***-

ների նկատմամբ (տեսակային կազմի և առանձնյակների թվի կայունության պահպանման առումով), գենետիկայում, կիբեռնետիկայում, էկոլոգիայում ևն:

ՀՈՄԵՈՍՏԱՏ (< ***հոմեո***... և հուն.՝ statos – կանգնած, անշարժ), նմանակ. էլեկտրամեխ. սարք, որը մոդելավորում է կենդանի օրգանիզմի առանձին հարաչափեր (օր.՝ մարմնի ջերմաստիճան, արյան մեջ թթվածնի պարունակություն, զարկերակ. ճնշում)՝ անհրաժեշտ սահմաններում պահպանելու հատկությունը: Առաջարկել է անգլիացի Ռ. Ռ. Էշբին (1948): Հ-ի սկզբունքն օգտագործվում է ավտոմատ կարգավորման (օր.՝ ինքնաղեկասարք), տեխ. համակարգի հարաչափերի լավագույն արժեքների որոշման համար:

ՀՈՄԵՐԱԿԱՆ ՉԱՓ, չափական կառուցվածք (***վեցաչափ***), որով գրված են ***Հոմերոսի*** «***Իլիական***»-ը և «***Ոդիսական***»-ը: Կիրառել են նաև Վերգիլիոսը, Օվիդիուսը, Հորացիոսը և ուր.:

ՀՈՄԵՐՈՍ (Homeros, մ. թ. ա. մոտ VIII դ.), Հին Հունաստանի էպիկ. բանաստեղծ: Հայտնի են Հ-ի ***«Իլիական»*** և ***«Ոդիսական»*** պոեմները, որոնք թարգմանվել են բազմաթիվ լեզուներով, այդ թվում՝ հայ.: Հեղինակ է նաև «Հոմերոսյան հիմներ», «Մարգարիտա» գործերի: Հ-ին վերաբերող ավանդություններին և վերագրվող գործերին առնչվող խնդիրներն ստացել են «հոմերոսյան հարց» անվանումը:

ՀՈՄԵՐՈՍՅԱՆ ՔՐՔԻՋ, անզուսպ, որոտալից ծիծաղ: Արտահայտությունն առաջացել է ***Հոմերոսի*** անունից, որն իր գործերում նկարագրել է Օլիմպոսի աստվածների ծիծաղը: Փխր. իմաստով՝ առատ, ամեհի:

ՀՈՄԻՆԻԴՆԵՐ (< լատ. homo – մարդ և հուն.՝ eidos – տեսակ), ***պրիմատների*** կարգի ընտանիք. ընդգրկում է ժամանակակից տիպի մարդուն և բրածո մարդկանց՝ պիտեկանտրոպներին, նեանդերթալցիներին և, հավանաբար, ավստրալոպիտեկների տիպի որոշ բրածո բարձրակարգ պրիմատների:

ՀՈՄՈ... (հուն.՝ homos – հավասար, միանման, միատեսակ), բարդ բառերի սկզբնամաս. նշանակում է միասեռություն, հավասարություն, միասնություն:

ՀՈՄՈ ԷՐԳԱՍՏԵՐ (Hómo ergáster, լատ. – բառացի՝ աշխատող մարդ, աֆրիկ. արքանտրոպ, աֆրիկ. պիտեկանտրոպ), Homo սեռի բրածո տեսակ: Ձևավորվել է Աֆրիկայում մոտ 1,8 մլն տարի առաջ (Սվարտկրանս, Կոոբի-Ֆորա, Նարիոկոտոմե ևն): Գաղթել է Ասիա, որտեղ դարձել է ***հոմո էրեկտուսի*** նախնին: Աֆրիկայում մոտ 900 հզ. տարի առաջ ***հայդելբերգյան մարդն*** առաջացել է Հ. է.-ից:

ՀՈՄՈ ԷՐԵԿՏՈՒՍ (Hómo eréctus, լատ. – բառացի՝ ուղիղ քայլող մարդ), Homo սեռի բրածո տեսակ՝ ներառյալ այսպես կոչված ճավայան պիտեկանտրոպը (1,8 մլն – 500 հզ. տարի առաջ) և չին. պիտեկանտրոպները կամ սինանտրոպները (1,1 մլն –150 հզ. տարի առաջ): Ծագում է աֆրիկ. ***հոմո էրգաաթերից***, որի հետ երբեմն միավորում են մեկ տեսակի մեջ: Մի շարք մարդաբաններ ասիական Հ. է.-ին համարում են էվոլյուցիայի փակուղային ճյուղ, որին 350–100 հզ. տարի առաջ դուրս է մղել ***հայդելբերգյան մարդը***: Պոլիդենտրիստ. տեսության կողմնակիցների կարծիքով Հ. է. Արլ. Ասիայի և Ավստրալիայի ժամանակակից բնակչության ուղիղ քայլող նախնիներն են:

ՀՈՄՈ ՀԱԲԻԼԻՍ (Hómo hábilis, լատ. – բառացի՝ հմուտ մարդ), Homo սեռի բրածո տեսակ: Ձևաբանորեն մոտ է ավստրալոպիտեկին: Ապրել է 2,4–1,6 մլն տարի առաջ Արլ. և Հվ. Աֆրիկայում (գտածոները՝ Օլդուվայան կիրճում, Կոոբի-Ֆորայում և այլուր): Հ. հ-ի դարաշրջանում ի հայտ է եկել պատմության մեջ առաջին՝ Օլդուվայան մշակույթը:

ՀՈՄՈ ՍԱՊԻԵՆՍ (Hómo sápiens, լատ. – բառացի՝ բանական մարդ), Homo սեռի տեսակ: Ձևավորվել է Աֆրիկայում 280–100 հզ. տարի առաջ (այսպես կոչված ուշինադար. սապիենս. Ֆլորիսբադ, Էլիհ-Սպրինգս Լետոլի, Հոմո-2, Ջերել-Իրհուդ ևն): 120–100 հզ. տարի առաջ Աֆրիկայում ի հայտ է եկել Հ. ս-ի ժամանակակից տեսակը (Հոմո-1, Կլասիես-Ռիվեր ևն): Նույն ժամանակ հնադար. սապիենսները երևան են եկել Մերձ. Արևելքում (Կաֆզեխ, Սխուլ), 90 հզ. տարի առաջ Արլ. Ասիայում (Դինցուն, Լյուցզյան, Լայշոյին) և այլուր: Հ. ս. վերաբնակվել է Եվրոպայում 40–35 հզ. տարի առաջ, դուրս են մղել նեանդերթալցիներին և սկսել տարածել Օրինյակ մշակույթը: Հնաբարեդար. Եվրոպայում տարբերվում են կրոմանոնյան, գրիմալդյան, կոմբ-կապելյան, սոլյուտրեյան, օբերկասելյան, շանսելադյան, պրժեդմոստյան ձևաբան. տիպեր: Դոյություն ունեն Հ. ս-ի կրթման բազմակենտրոն մոդելներ, որոնք կոչվում են 2-ից (Աֆրիկայում և Եվրոպայում) մինչև 5 բանականացման (սապիենտացման) օջախներ. դրանց են վերագրվում մարդու ժամանակակից ռասաները (այսպես կոչված ցիուղավորման մոդել): Հ. ս-ի էվոլյուցիայի ընթացքը դեռևս չի կարելի ավարտված համարել:

ՀՈՄՈԳԱՄԻԱ (< ***հոմո***... և հուն.՝ gamos – ամուսնություն), 1. սպիի և երկսեռ ծաղկի փոշանոթի միաժամանակյա հասունացումը: Հ-ի դեպքում հնարավոր է ինքնափոշոտում: 2. Գեների միևնույն կոմբինացիաների փոխանցումը արական և իգական առանձնյակներին:

ՀՈՄՈԳԵՆ (հուն.՝ homogen – միասեռ), 1. քիմիայում՝ ***միասեռություն***, 2. (թվար.) մեծություններ, որոնք չափվում են նույն միավորով:

ՀՈՄՈԶԻԳՈՏՈՒԹՅՈՒՆ, բջիջ կամ օրգանիզմ, որտեղ հոմոլոգ քրոմոսոմները կրում են տվյալ գենի միևնույն ձևը: Տես նաև *Հետերոզիգոտություն*:

ՀՈՄՈԼՈԳ ՇԱՐՔԵՐԻ ՕՐԵՆՔ ժառանգական փոփոխականության մեջ, ձևակերպել է Ն. Ի. ***Վավիլովը*** 1920-ին. հաստատում է բույսերի ազգակից խմբերի փոփոխականության զուգահեռականությունը: Հետագայում պարզվել է, որ այդ երևույթի հիմքում ընկած է գեների (նրանց միատեսակ մոլ. կառուցվածքը) և ազգակից տեսակների քրոմոսոմներում նրանց տեղադրության կարգի նմանությունը (հոմոլոգիան):

ՀՈՄՈԼՈԳ ՕՐԳԱՆՆԵՐ (հուն.՝ homologos – համապատասխան, միանման), օրգաններ, որոնք զարգանում են ընդհ. սաղմերից տարբեր կարգաբան. խմբերի օրգանիզմներում: Միմյանց նման են կառուցվածքի և զարգացման ընդհ. պլանով: Կարող են կատարել միատեսակ (օր.՝ վարդակաչի սոխուկը և կարտոֆիլի պալարը) կամ ոչ միատեսակ (օր.՝ թռչունի թևերը և մարդու ձեռքերը) ֆունկցիաներ:

ՀՈՄՈԼՈԳԻԱԿԱՆ ՇԱՐՔԵՐ (քիմ.), օրգ. միացությունների խմբեր, որոնք ունեն քիմ. միանման հատկություններ և կառուցվածք, բայց տարբերվում են ածխաջրածնային ռադիկալի մեկ կամ մի քանի մեթիլեն. խմբով: Մեթիլեն. խումբը (–CH_2–) կոչվում է հոմոլոգ. տարբերություն: Հ. շ-ի անդամները կոչվում են **հոմոլոգներ**:

ՀՈՄՈԿԻ ՆԱԳ (Homoki Nagy) Իշտվան (1914–1980), հունգար կինոռեժ.: Նկարահանել է գիտահանրամատչելի («Փոքր Բալատոնի փետրավորների աշխարհը», 1949, «Արհեստական մեծ լճակների կյանքը», 1951), գեղ. («Կատվի արկածները», 1962–72, «Ընկերներ», 1968) ֆիլմեր: Լ. Կոշուտի անվ. մրց. (1952):

ՀՈՄՈՍԵՔՍՈՒԱԼԻԶՄ, տես *Համասեռամոլություն*:

ՀՈՄ-ՐՈՒԼ (անգլ.՝ home rule – բառացի՝ ինքնավարություն), Իռլանդիայի ինքնավարության ծրագրի իրականացման համար պայքարը XIX դ-ի վերջին և XX դ-ի սկզբին: Հ-ի մասին օրինագիծն անգլ. խորհրդարանի քննարկմանն է ներկայացրել Ու. Գլադստոնը 1886 և 1893-ին, բայց չի ընդունվել: Օրինագիծը հաստատվել է 1914-ին, սակայն ԱՀՊ-ի սկսման պատճառով նրա իրագործումը հետաձգվել է: 1921-ին, աջ շինֆեյնների ղեկ-ների և անգլ. կառ-յան միջև կնքված պայմանագրով, Իռլանդիայի հվ. մասին տրվել է դոմինիոնի կարգավիճակ՝ որպես «Իռլանդիայի ազատ պետություն», իսկ Հս. Իռլանդիան (Օլսթեր) թողնվել է Մեծ Բրիտանիայի կազմում:

ՀՈՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ I (նախքան գահակալությունը՝ Տեֆերի Մեկոննին, 1892–1975), Եթովպիայի կայսր՝ 1930–74-ին: 1935–36-ի իտալա-եթովպ. պատերազմի ժամանակ գլխավորել է իտալացիների դեմ պայքարը: 1974-ի սեպտ-ին գահընկեց է արվել, 1975-ի օգոստ-ին՝ սպանվել:

ՀՈՆԳԱՅ, ք. Վիետնամի հս-արլ-ում, Կուանինին նինգ-ի վարչ. կենտրոնը, նվինգստ Հվ-չին. ծովի Բաբկո ծոցում: Բն.՝ 127 հզ. (1992):

ՀՈՆԳՀԱ (Կարմիր գետ), գետ Վիետնամի հս-ում և Չինաստանում: Երկ.՝ 1183 *կմ*, ավազանը՝ 158 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ մոտ 3800 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է ներքին հոսանքում:

ՀՈՆԴՈՒՐԱՍ (Honduras), պետություն Կենտր. Ամերիկայում: Սահմանակից է Նիկարագուային, Սալվադորին և Գվատեմալային: Տարածքը՝ 112 հզ. *կմ*^{2}, բն.՝ 8,4 մլն (2013): Մայրաքաղաքը՝ ***Տեգուսիգալպա***: Պետ. լեզուն՝ իսպ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Բաժանված է 18 վարչ. դեպարտամենտի և 1 կենտր. օկրուգի: Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է: Անդամակցում է ՄԱԿ-ին, Կենտրոնամերիկ. ինտեգրացիոն համակարգին, ԱոտՀԿ-ին ևն: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 2,3 հզ. ԱՄՆ դոլար է (2014): Արտահանում է նավթ, սուրճ, ծովամթերք ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, սպառող. ապրանքներ, սննդամթերք, քիմիկատներ ևն: Դրամ. միավորը՝ լեմպիրա:

Հնում Հ-ի տարածքում բնակվել են հնդկացիներ: XVI դ-ի սկզբին այն նվաճել են իսպանացիները, որոնք այստեղ որպես աշխատուժ բերել են աֆրիկացի ստրուկների: 1821-ին անկախացել է: 1823–38-ին եղել է Կենտր. Ամերիկայի միացյալ պրովինցիաների կազմում: 1824-

ին վերացվել է ստրկությունը: XIX դ–ի 2–րդ կեսին եղել է ԱՄՆ–ի տնտ. և քաղ. վերահսկողության, իսկ XX դ–ի սկզբից մինչև 1980–ական թթ–ի վերջերը գրեթե մշտապես եղել է բռնատիր. և ռազմ. վարչակարգերի իշխանության տակ: 1990–ական թթ–ից երկիրը կառավարել են Ազգ. և Ազատ. կուս–ներից ընտրված նախագահները: 2014–ին նախագահ է ընտրվել Խուան Էռնանդեսը:

ՀՈՆԴՈՒՐԱՍԻ ԾՈՒՑ (Golfo de Honduras), Կարիբյան ծովի մասը Կենտր. Ամերիկայի ափերի մոտ: Երկ.՝ 102 *կմ*, լայն.՝ 155,5 *կմ*, խոր.՝ 22–54 *մ* (մուտքի մոտ՝ ավելի քան 2000 *մ*): Հ. ծ. թափվում է Մինտանգուա գետը: Գլխ. նավնգստ–ները՝ Պուերտո Կորտես (Հոնդուրաս), Պուերտո Բարիոս և Լիվինգստոն (Գվատեմալա):

ՀՈՆԴՈՒՐԱՑԻՆԵՐ, ժողդ, Հոնդուրասի հիմն. բնակչությունը: Ընդհ. թիվը՝ 8,5 մլն (2013): Լեզուն՝ իսպ.: Հավատացյալները հիմնականում կաթոլիկ են:

ՀՈՆԵԳԵՐ (Honegger) Արթուր (1892–1955), ֆրանսիացի (ծագումով՝ շվեյցարացի) կոմպոզիտոր, հաս. գործիչ: *«Վեցյակ»* ստեղծագործ. խմբի անդամ, միջազգ. երաժշտ. խորհրդի կազմակերպիչներից: Զարգացրել է օպերա–օրատորիայի ժանրը: Հեղինակ է «Հուդիթ» (1925, 2–րդ խմբագրությունը՝ 1936), «Անտիգոնե» (1926), «Արծվիկ» (համահեղ.՝ Ժ. Իբեր, 1935) օպերաների, «Դավիթ արքա» (1921, 3–րդ խմբագրությունը՝ 1937), «Ժաննա դ'Արկը խարույկի վրա» (1935) օրատորիաների, նվագախմբային երկերի՝ «Սուրբ ծննդյան կանտատը» (1953), «Պասիֆիկ 231» (1923), նաև սիմֆոնիաների, բալետների և այլ գործերի:

ՀՈՆԵԿԵՐ (Honecker) Էրիխ (1912–1994), ԳԴեմՀ–ի Պետխորհրդի նախագահ՝ 1976–89–ին, 1971–89–ին՝ Պաշտպ–յան ազգ. խորհրդի նախագահ: ԽՄ (1982), ԳԴեմՀ (1987) հերոս: 1971–ից՝ ԳՍՄԿ ԿԿ 1–ին քարտուղար, 1976–89–ին՝ գլխ. քարտուղար:1989–ին հեռացվել է կուս. և պետ. պաշտոններից: Գերմանիայի միավորումից հետո ձերբակալվել է պետ. մեղադրանքով: Մահացել է Չիլիում՝ վտարանդիության մեջ:

ՀՈՆԵՐ, վաչկատուն ժողդ: Կազմավորվել են II–IV դդ–ում Նախաուրալում՝ թյուրքալեզու հոննու և տեղ. ուգրական ցեղերից: 370–ական թթ–ին Հ. զանգվածաբար գաղթել են Հս. Կովկաս, ապա՝ Դոնի ավազան և հս. մերձսևծով. շրջաններ: 394–395–ին Կովկասով անցել են Ասորիք և Կապադովկիա, սպառնացել Արլ. Հռոմ. կայսրությանը: Հ–ի ցեղամիավորումն իր հզորության գագաթնակետին է հասել ռազմ. առաջնորդ *Աթիլայի* օրոք (434–453): Աթիլայի մահից հետո (453) Հ. ցրվել են տարբեր երկրներ:

ՀՈՆԻ (Cornus), հոնազգիների ցեղի բնանիքի ծառերի և թփերի ցեղ: Բարձր.՝ 4–8 *մ*, պսակի տրամագիծը՝ 3–6 *մ*: Երկարակյաց է: Պտուղը կորիզապտուղ է՝ կարմիր, մսալի: Հայտնի է 4 տեսակ, ՀՀ–ում՝ 1՝ Հ. սովոր.՝ Իջևանի, Նոյեմբերյանի, Թումանյանի, Տավուշի, Զանգեզուրի անտառներում և Սյունիքի մարզի ցածրադիր մասերում: Մշակովի Հ–ի լավագույն փոփոխակներ տարածված են նաև Երևանի շրջակա այգիներում (Նորք), Կոտայքի և Արագածոտնի մարզերում:

ՀՈՆԻ, *Հայնի*, բք Կիլիկյան Հայաստանի Զահան գվո–ում (ներկայիս Թուրքիայի Յարփուզ գյուղավանից մոտ 3 *կմ* հս–արլ.): XI դ–ի 2–րդ կեսին մտել է Փիլարտոս Վարաժնունու հայկ. իշխանության, այնուհետև՝ Կիլիկիայի հայկ. պետության մեջ: Հ. ավերվել է օսմ. տիրապետության ժամանակ: Այժմ քրդաբնակ գյուղ է, որի շրջակայքում նշմարվում են հին քաղաքի ու բերդի ավերակները:

ՀՈՆԻՄ, *Յոնիա*, Փոքր Ասիայի արմ. ծովափի միջին մասի (հս–ում՝ Փոկեա, հվ–ում՝ Միլետ ք–ների միջև) և Էգեյան ծովի հարակից կղզիների (Պսարա, Քիոս, Սամոս, Իկարիա, Պատմոս, Լեպսիա, Լերոս) հինհոն. անվանումը: Հ–ում են առաջացել հինհոն. փիլ–յունը (*Անաքսիմանդրոս*, *Անաքսիմենես*, *Թալես*) և պատմագրությունը (*լոգոգրաֆներ*, *Հերոդոտոս*): XIV–XV դդ–ում նվաճել են օսմ. թուրքերը: 1919–ին հոն. զորքերն ազատագրել են մայրցամաքային Հ., սակայն 1922–ին թողել են այն, որտեղից հույն և հայ բնակչությունը վտարվել է: Ներկայում այն Թուրքիայի Իզմիր և Այդընի իլերի կազմում է:

ՀՈՆԻԱԿԱՆ ԾՈՎ, Միջերկր. ծովի կենտր. մասը՝ Բալկան. և Ապենինյան թ–կղզիների, Կրետե ու Սիցիլիա կղզիների միջև: Օտրանտո նեղուցով միանում է Ադրիատիկ, Մեսինայի նեղուցով՝ Տիրենյան ծովերին: Ափերը խիստ կտրտված են: Խոր.՝ մինչև 4594 *մ*: Փետր–ին ջրի միջին ջերմաստիճանը 14°C է, օգոստ–ին՝ 25,5°C, աղիությունը՝ ավելի քան 38 ‰: Խոշոր նվինգստ–ները՝ Պատրա, Կերկիրա (Հունաստան), Տարանտո, Կատանիա (Իտալիա):

ՀՈՆԻԱԿԱՆ ԿՂԶԻՆԵՐ, կղզեխումբ Հոնիական ծովում, Բալկան. թ–կղզու արմ. ափերի մոտ (Հունաստան): Տարածքը՝ 2,2 հզ. *կմ*²: Կազմված է 5 մեծ և բազմաթիվ փոքր կղզիներից: Ռելիեֆը լեռնային է: Բուսածածկույթում տիրապետում է մակվիսը: Հ. կ–ում են Կերկիրա, Արգոստոլիոն, Զակինթոս ք–ները:

ՀՈՆԻԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՆԵՐ, մ. թ. ա. VI–V դդ–ում Հունաստանի հոնիական գաղութներում ապրող հինհոն. փիլ–ները՝ *Թալեսը*, *Անաքսիմանդրոսը*, *Անաքսիմենեսը* (*միլեթյան դպրոց*), *Հերակլիտեսը*, *Դիոգենեսը*, որոնց փիլ–յան ելակետը գոյի միասնության, բոլոր իրերի որոշակի սկզբնապատճառից (ջուր, հուր, օդ, ապեյրոն) ստեղծվելու գաղափարն է: Հ. փ–ի բնափիլ–յանը բնորոշ է *հիլոզոիզմը*:

ՀՈՆԻԱԿԱՆ ՕՐԴԵՐ, 3 հիմն. ճարտ. *օրդերներից*: Ունի բարեկազմ սյուն՝ խարսխով, ուղղաձիգ փորվածքավոր (կանելյուրներ) բնով: Խոյակը 2 ոլորուն խոյազարդերով (վոլյուտաներ) է: *Անտաբլեմենտը* երբեմն առանց ֆրիզի է, արխիտրավը՝ 3 հորիզոն. շերտերով:

ՀՈՆԻԱՐԱ (Honiara), *Սողոմոնի Կղզիներ* պետության մայրաքաղաքը, նվինգստ Խաղաղ օվկ–ի ափին: Բն.՝ 63,3 հզ. (2010): Ունի օդանավակայան:

ՀՈՆԿՈՆԳ, *Սյանգանի* անգլ. անվանումը:

ՀՈՆՈԼՈՒԼՈՒ (Honolulu), ք. Հավայան կղզիների Օահու կղզում, ԱՄՆ Հավայի նահանգ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 390 հզ. (2010): Ծով. և օդ. ճանապարհների հանգույց է: Ունի նավանորոգման գործարան: Առողջավայր է, գրոսաշրջության կենտրոն: Մոտակայքում է ԱՄՆ Պեռլ Հարբոր ռազմածով. հենակայանը:

ՀՈՆՈՐԻՈՒՍ (Honorius, 384–423), Արմ. Հռոմ. կայսրության կայսր՝ 395–ից: Մինչև 408–ը, փաստորեն, կառավարել է զորավար Ստիլիքոնը, այնուհետև՝ պալատականները: Հ–ի օրոք՝ 410–ին, Հռոմը գրավել են վեստգոթերը՝ Ալարիխ I–ի գլխավորությամբ:

ՀՈՆՍՅՈՒ, Ճապոն. կղզեխմբի խոշորագույն կղզին Խաղաղ օվկ–ի և Ճապոն. ծովի միջև: Երկ.՝ ավելի քան 1400 *կմ*: Տարածքը՝ 230,4 հզ. *կմ*², բն.՝ 100 մլն (2012): Գերակշռում են լեռները (այստեղ է *Ֆուձիյամա* հրաբուխը, 3776 *մ*): Գլխ. քաղաքները՝ Տոկիո, Օսակա, Նագոյա, Կիոտո, Յոկոհամա, Կոբե:

ՀՈՇ, Օշ (Hoche) Լուի Լազար (1768–1797), ֆրանսիացի գեն.: 1790–ական թթ–ի հեղ. պատերազմների ժամանակ գլխավորել է մի շարք բանակներ, Բրետանում և Վանդեում ճնշել է հակահեղ. խռովություններ, հաղթել է ավստր. զորքերին:

ՀՈՊՈՊՆԵՐ (Upupidae), ակիհոանամանների կարգի թռչունների ընտանիք: Հայտնի է 1 տեսակ՝ հոպոպը (Upupa epops), բնադրող է, չվող: Մարմնի երկ.՝ 26–28, թևերի բացվածքը՝ 42–46 *սմ*, կ. զ.՝ 70 *գ*: Գետնին քայլում է՝ փուփուլը հովհարանման բացած: ՀՀ–ում լայնորեն տարածված է կիսաանապատներից մինչև լ–տափաստաններ: Օգտակար է. ոչնչացնում է գղտ. խոշոր վնասատուների (հատկապես՝ իշախառնչին):

ՀՈՋԿԻՆ (Hodgkin) Ալան Լլոյդ (1914–1998), անգլիացի ֆիզիոլոգ: Լոնդոնի թագավոր. ընկ–յան անդամ (1948) և նախագահ (1970–75), ՌԳԱ արտ. անդամ (1976–ից): Աշխ–ները վերաբերում են նյարդաբջջի ֆիզիոլոգիային և դրդման ու արգելակման մեխանիզմներին: Ապացուցել է, որ կենսապոտենցիալների ծագումը պայմանավորված է բջջաթաղանթի՝ իոնների նկատմամբ ունեցած ընտրող. թափանցելիությամբ: Նորելյան մրց. (1963, Ջ. Ք. *Էքլսի* և Ա. Ֆ. *Հաքսլիի* հետ):

ՀՈՌԵՏԵՍՈՒԹՅՈՒՆ, **պեսիմիզմ** (լատ.՝ pessimus – վատագույն), պատկերացում աշխարհում բացաս. սկզբի գերակայության վերաբերյալ (քաոս, չարիք ևն), անելանելիության տրամադրություն, ապագայի հանդեպ անհավատություն ևն: Ա. *Շոպենհաուերն* առաջինն էր, որ իր ուսուն*քն* անվանեց Հ.: Հակոտնյան *լավատեսությունն* է:

ՀՈՌԻ, հայկ. հեթանոս. տոմարի 2–րդ ամսվա անվանումը: Անշարժ (Սարկավագադիր) տոմարով Հ–ի 1–ը համապատասխանում է սեպտ–ի 10–ին:

ՀՈՌՈՄԱՅՐ, ճարտ. համալիր ՀՀ Լոռու մարզի Օձուն գ–ից 1,5 *կմ* հվ–արլ.: Բաղկացած է 2 հուշարձանախմբից: Զորալանջին Սբ Նշան միանավ թաղակապ եկեղեցին է (1187)՝ կից նույնատիպ եկեղեցին ու մատուռը (1201), ոչ հեռու՝ հս. կողմում ձգված ժամատունը (1301): Սարահարթին գավիթն է և 2 կողմնի կից մեկական միանավ թաղակապ եկեղեցիները (հվ–ը՝ 1206, հս–ը՝ XIII դ–ի կես):

ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔ, X–XI դդ–ի ճարտ. համալիր Անիից հս–արլ.՝ Ախուրյան գետի ափին (այժմ՝ Թուրքիայի տարածքում): Բաղկացած է մինչև XIII դ. կառուցված շինությունների 2 խմբից: Զորում՝ Սբ Մինաս (930–953) և Սբ Գևորգ (1013–ից հետո) գմբեթավոր դահլիճ եկեղեցի–դամբարանները, թաղածածկ մատուռն ու Աշոտ Գ Ողորմած Բագրատունու (953–977) դամբարանն են, բարձունքին Սբ Հովհաննես գմբեթավոր դահլիճ եկեղեցին և գավիթը (1038), հյուրատուն, մատուռներ, մահարձաններ, խաչքարեր՝ շրջափակված ուղղանկյուն պարսպով:

ՀՈՌՈՓՅԱՆ Սարգիս Թեոֆիլի (1930–1996), խմբ.: 1960–64-ին՝ «Մարտական պոստում», 1990–91-ին՝ «Օրինապահության դիրքերում» (այժմ՝ *«02»*) թերթերի հիմնադիր-խմբ.:

ՀՈՍԱՆՔ (ֆիզ.), որևէ հեղուկի, օդ. շիթի հոսք՝ միևնույն ուղղությամբ: Էլեկտրոնների ուղղորդված շարժումը կոչվում է *էլեկտրական հոսանք*:

ՀՈՍԱՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, էներգիայի տարբեր տեսակները էլ. էներգիայի փոխակերպող սարքեր: Քիմ. հ. ա-ում էլ. էներգիան ստացվում է օքսիդավերականգնման ռեակցիայի հետևանքով (*գալվանական տարրեր*): Լինում են **առաջնային** (գալվան. տարրեր և մարտկոցներ), **երկրորդային** (կուտակիչներ և կուտակիչ մարտկոցներ) և **վառելիքային տարրեր**: Ֆիզ. հ. ա. ջերմ., մեխ., էլեկտրամագնիս., նաև ճառագայթման և միջուկ. տրոհման էներգիան փոխակերպում են էլեկտրականության (էլեկտրամագնիս. գեներատորներ, արեգակն. և միջուկ. մարտկոցներ ևն): Տես նաև *Հոսանքի պահեստային աղբյուրներ*:

ՀՈՍԱՆՔԻ ԽՏՈՒԹՅՈՒՆ, էլ. հոսանքի բնութագրերից. հավասար է 1 *վ*-ում հոսանքի ուղղությանն ուղղահայաց միավոր մակերեսով անցնող էլ. լիցքի քանակին:

ՀՈՍԱՆՔԻ ՈՒԺ (ֆիզ.), միավոր ժամանակում հաղորդչի լայնական կտրվածքով անցնող էլ. լիցքի մեծությունը:

ՀՈՍՊԻՍ (անգլ.՝ hospice), **ապաստարան**, խնամքի և վերականգնող. մասնագիտացված սոցիալ-առողջապ. հաստատություն անհույս հիվանդների, միայնակ տարեցների, հաշմանդամների համար: ՀՀ-ում գործում է 2010-ից:

ՀՈՍՊԻՏԱԼ (լատ.՝ hospitalis – հյուրընկալ), բուժհիմնարկ (հիվանդանոց), նաև ռազմաբժշկ. հիմնարկ (զինվ. հոսպիտալ)՝ նախատեսված զինծառայողների հիվանդանոցային բուժման համար: ԱՄՆ-ում և Եվրոպայի որոշ երկրներում Հ. են կոչվում նաև քաղաքաց. առանձին բուժհիմնարկներ: Զինվ. 1-ին Հ-ներն ստեղծվել են Իսպանիայում XIV դ-ում, Ռուսաստանում՝ XVIII դ-ում, Հայաստանում՝ XIX դ-ում: Կան մշտ. (գործում են նաև խաղաղ շրջանում) և ժամանակավոր (կազմակերպվում են պատերազմի ժամանակ) Հ-ներ: ՂԱՊ-ի ժամանակ՝ 1990–94-ին, Հ-ներ են կազմակերպվել նաև Արցախում:

ՀՈՍՏԻՆՍԿԻ (Hostinsky) Օտակար (1847–1910), չեխ երաժշտագետ, գեղագետ, երաժշտ. քննադատ: Չեխ. պատմ. երաժշտագիտ-յան հիմնադիրը: Աշխ-ները վերաբերում են չեխ և գերմանացի կոմպոզիտորներին (Բ. Սմետանա, Ա. Դվորժակ, Ռ. Վագներ և ուր.), սլավոն. երաժշտ. բանահյուսությանը ևն:

ՀՈՍՈՒՆՈՒԹՅՈՒՆ, մեխ. լարումների ազդեցությամբ մարմինների առանց քայքայվելու պլաստիկ կամ մածուցիկ ձևախախտման հատկությունը: Հ. *մածուցիկությանը* հակադարձ մեծություն է: Գազերը և հեղուկները հոսում են ցանկացած լարումների, իսկ պլաստիկ պինդ մարմինները՝ միայն Հ-յան սահմանը գերազանցող լարումների դեպքերում:

ՀՈՒՔ (ջրաբանություն), որևէ ժամանակահատվածում տվյալ տարածքից հոսող ջրի քանակը: Ջրի համաշխ. շրջանառության բաղկացուցիչ մասն է (տես *Ջրի շրջապտույտ*): Առանձնացնում են մակերևութ. և ստորգետնյա Հ-եր: Ազդում է ռելիեֆի ձևավորման, երկրաքիմ. շարժընթացների, հողածածկի գոյացման (զարգացման), բուսածածկի տեղաբաշխման և այլ երևույթների վրա: ՀՀ տարածքից տարեկան Հ. 6,5–7 *կմ*^{3} է:

ՀՈՎԱԲ Ա ԴԱՎԹԵՑԻ (ծ. թ. անհտ–791), Ամննայոս հայոց կաթողիկոս՝ 790-ից: Գործունեության մասին ոչինչ չի ավանդվում:

ՀՈՎԱՋ, **ինձ, ընձառյուծ** [Felis (pardus) pardus], կատվազգիների ընտանիքի գիշատիչ կաթնասուն: Մարմնի երկ.՝ մինչև 160 *սմ*, կ. զ.՝ 75 *կգ*: Էգերն ավելի փոքր են: Մարմինը ձգված է, մկանուտ, ոտքերը համեմատաբար կարճ են, մորթին խիտ է՝ դեղին կամ շիկակարմիր՝ սև խալերով: Ապրում է Աֆրիկայի, Արլ. Ասիայի, ՌԴ և այլ երկրների անտառներում, լեռնեբրում: Մնվում է կճղակավոր կենդանիներով, թռչուններով ու կրծողներով: ՀՀ է անցնում Իրանից և Թուրքիայից, հանդիպում է Սյունիքի մարզից Արարատի մարզ ընկած գոտու (նաև «Խոսրովի անտառ» արգելոցում), երբեմն՝ նաև հս. մարզերի անտառներում: Գրանցված է ԲՊՄՄ և ՀՀ Կարմիր գրքերում:

ՀՈՎԱԿԻՄ ՊՐՈՒՍԱՑԻ (ծ. թ. անհտ–մոտ 1478), Կ. Պոլսի հայոց 1-ին պատրիարքը՝ 1461–78-ին: Եղել է Օսմ. կայսրության հայ համայնքների հոգևոր առաջնորդը: Պատրիարք է հռչակել սուլթան Մուհամեդ II-ը (Մեհմեդ)՝ կայսրության հայկ. թեմերը հայոց պատրիարքությանը ենթարկելու նպատակով: Պատրիարքարանը հաստատվել է Սամաթիայի հայաշատ թաղամասում, պատրիարքանիստը մինչև 1641-ը եղել է Սբ Գևորգ եկեղեցին: Ավանդաբար Հ. Պ-ուն է վերագրվում Կ. Պոլսում հայկ. 1-ին վարժարանի բացումը:

ՀՈՎԱԿԻՄ ՖԼՈՐԵՆՏԱՑԻ (մոտ 1132–1202/03), ճգնավոր, պայծառատես, մարգարե, *խիլիազմի* հիմնադիրը: Հեղինակ է «Հին և Նոր կտակարանների համաձայնեցումը», «Մեկնություններ Հովհան Աստվածաբանի հայտնությունների» աշխ-ների: Հ. Ֆ-ու ուսմունքը քննադատվել է կաթոլիկ. ժողովներում:

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Աննա Վիկտորի (ծ. 1970), ակնաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (2011), պրոֆ. (2015): Աշխ-ները վերաբերում են աչքի բորբոք. հիվանդություններին, աչքի առաջնային հատվածի վիրահատ. միջամտություններին:

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Բախտիար Մարդանի (ծ. 1926), թատերագետ, բանասեր, մատենագետ: Հեղինակ է «Ցեղասպանության թեման հայ թատրոնում, 1895–1995» (1998), «Թումանյանը և թատրոնը» (1999), «Հովհաննես Աբելյան» (2005), «Արուս Ասբյան» (2005), «Շեքսպիրը հայ թատրոնում» (2012), «Նոր Զուղայի թատրոնի տարեգրություն (1887–2012)» (2013) աշխ-ների: Կազմել է «Թատերական օրացույցներ» (1997–2011), «Հայոց ցեղասպանության նահատակ գործիչների ծածկանուններ» (2002) ժող-ները, «Հայոց ծածկանունների բառարանը» (2005):

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Գագիկ Սանուելի (1912–մ. թ. անհտ), կենսաքիմիկոս: Պրոֆ. (1950), Փարիզի բժշկ. և Բորդոյի պատմ. ԳԱ-ների թղթ. անդամ: Աշխ-ները վերաբերում են բժշկ. կենսաքիմիայի, հատկապես՝ ստերինների փոխանակությանը: Իրանի կենսաքիմ. միության, նաև "Acta Biochemica Iranica" գիտ. պարբ-ի հիմնադիրը: Իրանի մեջլիսի պատգմ. (2 անգամ): Ֆրանսիայի «Պալմ ակադեմիկ» գիտ. շքանշան:

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Գառնիկ Պատվականի (ծ. 1955), մանկավարժ: Մանկավարժ. գիտ. դ-ր (2010), պրոֆ. (2013): Աշխ-ները վերաբերում են անձի ձևավորման համակարգում ազգ. ավանդույթների և սովորույթների դերին:

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Իրինա Ռուբենի (ծ. 1945), ճարտարագետ-էլեկտրամեխանիկոս: Տնտեսագիտ. դ-ր (1999), պրոֆ. (2000): Կարեն *Քյանդարյանի* կինը: Աշխ-ները վերաբերում են էլեկտրոն. մեքենաշինությանը և ռազմ. արտադր-յան կատարելագործման հարցերին, մշակել է ինքնաշխատ ռոտոր. և ռոտորափոխակերիչ. գծերի նախագծման մեթոդներ: ՌԳԱՄ Մ. Վ. Լոմոնոսովի անվ. ոսկե մեդալ (2002):

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Խաչիկ Հովսեփի (1926–1995), լրագրող, խմբ.: Պատմ. գիտ. թեկնածու (1954): Եղել է ՀԺՄ վարչության նախագահ, 1966–70-ին՝ ԽՍՀՄ ժուռնալիստների միության վարչության քարտուղար, 1961–70-ին՝ «Սովետական Հայաստան» օրաթերթի, 1979–88-ին՝ «Կուսակցական խոսք» (1989-ից՝ «*Քաղաքական գրուցակից*») հանդեսի խմբ., 1992–95-ին՝ «Մեր խոսքը» թերթի հիմնադիր-խմբ.:

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Հակոբ (Հրայր) Սահակի (ծ. 1953), սրտավիրաբույժ: Հ-ի նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ «Նորք-Մարաշ» բժշկ. կենտրոնում բացվել են մանկ. (1993-ից) և մեծերի (1996-ից) սրտավիրաբուժության բաժիններ, իրականացվում սրտի բարդ վիրահատություններ: Հ-ի ղեկավարությամբ ՀՀ-ում վերապատրաստվում են սրտավիրաբույժներ տարբեր երկրներից: Երևանի պատվ. քաղաքացի (1977): ՀՀ ԳԱԱ պատվ. դ-ր (1989):

ՀՀ «Մխիթար Հերացի» մեդալ (1998):

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Հայկ Բաղալի (1898–1967), խորհրդ. հետախույզ, գեն-մայոր (1947): Քիմ. գիտ. դ-ր (1933): 1931–33-ին աշխատել է Գերմանիայում (Բեռլին), 1933–41-ին ԱՄՆ-ում (Նյու Յորք)՝ խորհրդ. առևտր. ներկայացուցչություններում, 1938–41-ին՝ ԽՍՀՄ հետախուզ. ցանցի ղեկ. ԱՄՆ-ում: 1942–47-ին՝ ԽՍՀՄ ՆԳԺԿ արտաքին հետախուզության վարչության պետի տեղակալ: Ղեկավարել է իր նախաձեռնությամբ կազմակերպված «Էնորմոզ» (անգլ. – ահռելի, սարսափելի) գիտատեխ. հետախուզ. ծրագիրը: 1947–51-ին՝ ԽՍՀՄ ազոտային արդ-յան ԳՀԻ տնօրեն:

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Մառլենա Ժիրայրի (ծ. 1942), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դ-ր (1990): Հայտնաբերել է մի շարք ռեակցիաներ β,β′-պոկումը և կատիոնոտրոպ O–C ալկիլ տեղաշարժը ֆոսֆորետաիններում, անիոնոտրոպ ալկիլ տեղաշարժը ֆոսֆոնիումային հիդրօքսիդներում, α–ալկօքսի-β-բրոմէթիլֆոսֆոնիումային աղերի ջերմ., ջր. և սպիրտ. ճեղքման մեխանիզմները:

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Նաիրա Վիկտորի (ծ. 1966), կիրառ. մաթ-ի բնագավառի գիտնական: Ֆիզմաթ. գիտ. թեկնածու (1992), պրոֆ. (2003): 1998-ից՝ Վիրջինիայի (ԱՄՆ) պոլիտեխ. համալսարանում: Աշխ-ները վերաբերում են հետահաղորդակցությանը, ոչորտատեխնիկային, անկանխատեսելի պայմաններում ինքնակառավարվող համակարգերի ղեկավարման խնդիրներին, հարմարողականության և կայունության տեսությանը:

ՀՈՎԱՆԵՍ ԿԱՋՄՈՂ, XVI դ-ի քարգործ վարպետ: Հեղինակ է 2 բարձրարվ.

խաչքարերի, որոնք ագուցված են ՀՀ Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր գ–ի Սբ Խաչ եկեղեցու հվ. (1542) և հս. (1551) մուտքերին՝ թվականներով և կազմողի հիշատակությամբ:

ՀՈՎԱՆՈՑԱՄԱՆԿԵՐ (Macrolepiota), գլխարկավոր ագարիկային սնկերի ցեղ: Հայտնի է մոտ 11 տեսակ, ՀՀ–ում՝ 8: Առավել տարածված են դաշտայինը և բարձրը, հանդիպում են անտառներում, դաշտերում, մարգագետիններում, այգիներում: Բարձր Հ–ի գլխարկը ձվաձև է, այնուհետև՝ հովանոցանման, կենտրոնում՝ թմբիկով: Պտղամիսը սպիտակ է, փխրուն, թույլ սնկային հոտով և ընկույզի համով: Ուտելի են, հիմնականում օգտագործում են երիտասարդ պտղամարմինների գլխարկները:

ՀՈՎԱՍԱՓ, XII դ–ի ճարտ.: Կառուցել է *«Կարմիր եղցի»* համալիրի գլխ. եկեղեցին և ժամատունը:

ՀՈՎԱՍԱՓ, XIII դ–ի 2–րդ կեսի մանրանկարիչ: ***Կիլիկիայի մանրանկարչության դպրոցի*** ներկայացուցիչ: 1273–ին Սկևռայում Հ–ի ծաղկած Ավետարանի (Ստամբուլի Թոփգապու Սարայ թանգարան, ձեռ. № 122) պատկերների հետ նույնանում են նաև Կոպիտառում ընդօրինակած Ավետարանի (Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի թանգարան, ձեռ. № 122), «Ծնունդ» և «Մկրտություն» մանրանկարները: Հավանորեն նրան է պատկանում նաև 1270–ին Գռներում ընդօրինակած Աստվածաշնչի (Մտնդ., ձեռ. № 345) Մատթեոսի դիմանկարը: Հ–ի մանրանկարների զարդաձևերն օգտագործել են XIII դ–ի 2–րդ կեսի Կիլիկիայի մանրանկարիչները:

ՀՈՎԱՍԱՓ ՍԵԲԱՍՏԱՑԻ, XVI դ–ի տաղասաց, մանրանկարիչ, վարքագիր–վկայագիր, խմբ., գրիչ, սարկավագ: *Հայրենների* առաջին բանահավաքներից: Արժեքավոր են Հ. Ս–ու տոմարագիտ. երկերը, միջնադար. հայրեն–կաֆաների ավանդույթով ստեղծած «Կաֆայ վասն աղէկ մանկանն Գրիգորի» (1548) բանաստեղծությունը և «Աշխարհիս սահմանն է հանց» 160–տողանոց կաֆաների շարքը: 1535–ին ստեղծել է մի բարձրարժեք ձեռագիր (Բեռլինի ազգ. գրադարան, ձեռ. № 805), որտեղ ընդօրինակել, խմբագրել և պատկերազարդել է *Ալեքսանդր Մակեդոնացու* պատմությունը: Հ. Ս–ուց պահպանվել են պատմ. թեմաներով պոեմներ («Վասն Կոկճայ Նահատակին Սեբաստիոյ», 1536, ևն), ինքնագիր Հայսմավուրքը, չափածո հիշատակարաններ (ՎննՄՄ մտնդ., ձեռ. № 172, Երուսաղեմի Սբ Հակոբյանց վանք, ձեռ. № 1455, Մտնդ., ձեռ. № 3425, ևն), տոմարագիտ. և այլ գործեր: Հեղինակ է նաև «Բանաստեղծություններ» (հրտ.՝ 1964) ժող–ի: Նկարազարդել է իր գր. երկերն ու ընդօրինակած ձեռագրերերը:

ՀՈՎԱՍԱՓՅԱՆ Հովսեփ Վարդանի (ծ. 1923), բժիշկ–բակտերիաբան, համաճարակաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1967): ՀԽՍՀ վաստ. բժիշկ (1966): Աշխ–ները վերաբերում են բնական օջախային հիվանդությունների հայտնաբերմանն ու հետազոտմանը, հայ բժշկության պատմությանը:

Համահեղինակ է «Լևոն Տիգրանյան» (2000) և «Ակնարկներ հայ բժշկության պատմությունից» (2004) գրքերի:

ՀՈՎԱՐԴ (Howard) Ջոն Ուինսթոն (ծ. 1939), Ավստրալիայի վարչապետ՝ 1996–2007–ին: 1977–89–ին՝ Ավստրալիայի պետ. գանձապահ, 1985–89–ին՝ Ավստրալիայի լիբերալ կուս–յան ղեկ.:

ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ (ՀԿՀ), հայկ. բարեսիր. կազմ–յուն: Հիմնադրել են Միհրան և Զաբել Կարագյոզյանները 1921–ին Նյու Յորքում՝ ի հիշատակ իրենց վաղամեռիկ որդու՝ Հովարդի: Տարբեր երկրներում ունի մանկաբուժ., ակնաբուժ., ատամնաբուժ. բազմաթիվ դարմանատներ, դպրոց. առողջապ–յան, թոքախտի դեմ պայքարի, կանանց հիվանդությունների և հղի կանանց, սոցիալ. օգնության բաժիններ ևն: 1992–ից ՀԿՀ ծրագրեր է իրականացնում նաև ՀՀ–ում և ԼՂՀ–ում. Երևանում, Գորիսում, Վանաձորում և Ստեփանակերտում գործում են ավելի քան 20 ատամնաբուժ. և ակնաբուժ. կենտրոններ, կազմակերպում է մասնագետների վերապատրաստման դասընթացներ, օգնություն ցուցաբերում մանկատներին, գիշերօթիկ դպրոցներին, բժշկ. կենտրոնների և հիվանդանոցների:

ՀՈՎԵՅԱՆ (Հովհաննիսյան) Հովիկ Վաչագանի (ծ. 1956), բանաստեղծ, լրագրող, թարգմանիչ: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2011): 2006–08–ին՝ ՀՀ մշակույթի նախարար, 2009–ից՝ Ժող ստեղծագործության կենտրոնի տնօրեն: Հեղինակ է «Արահետ» (1990), «Ծես» (2000), «Ժայռագրեր» (2003), «Բանաստեղծություններ» (2004), «Կեսգիշերային լիբրետո» (2006), «Ուրարտական անձրևներ» (2009), «Քամիների վերադարձը» (պարսկ., 2009), «Հիշողության կավ» (2011), «Վրիպած ջրհեղեղ» (2014), «Անժամանակություն» (2015) և այլ բանաստեղծությունների ժող–ների:

Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամի ոսկե (2005), Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսի (2006), ՀՀ ՄՆ (2005) ոսկե մեդալներ:

ՀՈՎԵՆԻԱ (Hovenia), դժնիկազգիների ընտանիքի բույսերի ցեղ: Հայտնի է 3 տեսակ՝ Հվ–արլ. Ասիայում, Կովկասի սևծով. ափին և Ղրիմի հվ. ափին: Մշակվում է 1 տեսակ՝ *կոնֆետածառը*:

«ՀՈՎԵՐ» կամերային երգչախումբ պետական, հիմնադրվել է 1992–ին Երևանում (հիմնադիր–ղեկ.՝ Սոնա Հովհաննիսյան): 2011–ից՝ Կամեր. երաժշտության ազգ. կենտրոնի կազմում: Երկացանկում՝ խմբերգ. ներկայացումներ, մեծակտավ վոկալ–սիմֆ., օպեր., կամեր. և այլ երկեր: Հայ կոմպոզիտորների (Վ. Շարաֆյան, Ա. Ավանեսով, Ա. Ազիզյան, Ս. Երկանյան, Ե. Երկանյան, Ս. Բաբաթորոսյան) մի շարք երկերի առաջին կատարողը: ՀՀ ՄՆ ոսկե մեդալ:

ՀՈՎԻՆԴ ՍԻՆԳՀ (1666–1708), սիկհերի X և վերջին գուրուն: Բարենորոգել է սիկհականությունը՝ գուրուի իշխանությունը հանձնել սիկհ. ռազմակրոն. կազմ–յանը՝ Հալսեին:

ՀՈՎԻՎՅԱՆ Սարգիս Վարդանի (ծ. 1938), ֆուտբոլիստ, մարզիչ: ԽՍՀՄ ս. վ. (1959), ՀՀ վաստ. մարզիչ (1971): Խաղացել է Մոսկվայի ԲԿՄԱ (1961), «Սպարտակ» (1967), Երևանի «Արարատ» («Սպարտակ», 1957–70) թիմերում: 1970–72–ին՝ Գյումրիի «Շիրակ» և Վանաձորի «Լոռի», 1980–81–ին՝ Երևանի «Արարատ», 2001–04–ին՝ Հայաստանի պատանեկան հավաքականի գլխ. մարզիչ:

«ՀՈՎԻՏ», ազգ., հաս–քաղ., գր., հոգևոր շաբաթաթերթ (1906–17, Թիֆլիս, 1906–10–ին՝ «Հովիւ»):

ՀՈՎԻՏՆԵՐ, ռելիեֆի երկայնաձիգ, իջվածքային ձև՝ առաջացած հոսող ջրի քայքայիչ ազդեցության և երկրակեղևի տեկտ. խախտումների հետևանքով: ՀՀ տարածքին բնորոշ են լեռն. գետերի կիրճաձև (Որոտանի, Դեբեդի, Քասաղի), կանիոնաձև (Հրազդանի, Արփայի, Ազատի), V–աձև (Գետիկի ևն) Հ.: Առանձնանում են երկայնական (Փամբակի, Ճորոխի), լայնակի–անտեցեդենտ (Արաքսի հովիտը Մեղրու մոտ) տեկտ. հովիտները: Որոշ լեռն. գետեր միջին և ստորին հոսանքներում առաջացնում են հարթավայր., ողողատ. Հ. (Արաքսի՝ Արարատյան դաշտում): Լեռն. շրջաններին բնորոշ են նաև տաշտակաձև–սառցադաշտ. Հ. (Մանթաշի, Ամբերդի ևն):

ՀՈՎՀԱՆ ԱՆԳԼԻԱՑԻ, Ջուանի կամ **Ջոն Անգլուս դե Սուինֆորդ** (Joannes Anglus de Swineford), Արլ. Հայաստանում XIV դ–ի 1–ին կեսին ծավալված ունիթոր. շարժման գործիչ, դոմինիկյան քարոզիչ, աստվածաբան և փիլ.: 1318–ին Բարդուղիմեոս Բոլոնիացու և Պետրոս Արագոնացու հետ հաստատվել է Մարաղայում՝ կաթոլիկություն տարածելու նպատակով: 1330–ին կաթոլիկ այլ միսիոներների հետ տեղափոխվել է Քռնայի վանք և զբաղվել գիտ. ու դասախոս. աշխ–ներով: Փիլ–յան և աստվածաբանության հարցերում հետևել է *Թոմմա Աքվինացուն*: Հ. Ս–ու «Համառոտ հաւաքումն յաղագս հոգւոյ և զօրութեանց նորին», «Յաղագս առաքինութեանց հոգւոյն» եւ «Յաղագս բնութեան հրեշտակաց» աշխ–ները պահպանվել են հայ.:

ՀՈՎՀԱՆ ԵԿԵՂԵՑԱՑԻ, V դ–ի թարգմանիչ: Հայկ. գրերի ստեղծման համար *Մեսրոպ Մաշտոցի* հետ Ասորիք գնացած աշակերտներից: *Հովսեփ Պաղնացու* հետ մասնակցել է Աստվածաշնչի Առակաց գրքի թարգմանությանը:

ՀՈՎՀԱՆ ԵՎԳԵՆԻԿՈՍ (մոտ 1399–1456–ից հետո), բյուզանդացի գրող, եկեղեց. գործիչ: Հակաունիթորների առաջնորդ, մետրոպոլիտ *Մարկոս Եփեսոսացու* կրտսեր եղբայրը և համախոհը: Ականատես է եղել օսմանցիների՝ Կ. Պոլսի գրավմանը 1453–ին, գրել «Մոնողիա մեծ քաղաքի կործանման» ստեղծագործությունը: Հեղինակ է նաև աստվածաբան. տրակտատների, վարքագր., հոետոր. երկերի, հիմներգների:

ՀՈՎՀԱՆ ԵՔԵՍԱՑԻ (507–586), ասորի մատենագիր: «Եկեղեցական պատմություն» աշխ–յան (ընդգրկել է մ. թ. ա. I դ.–մ. թ. 585–ի դեպքերը) 3–րդ գրքում արժեքավոր տեղեկություններ կան հայ–պարսկ. հարաբերությունների, 571–ի հայոց ապստամբության մասին նև:

ՀՈՎՀԱՆ ԿԱՍԻԱՆՈՍ ՀՌՈՄԵԱՑԻ (Johannes Cassianus Romanus, մոտ 360–մոտ 435), աստվածաբան, գրող, հաւմաքիստ. սուրբ: Հովհան Ոսկեբերանի աշակերտն ու մտերիմ ընկերը: Հիմնադրել է Սբ Վիկտորի մենաստանը և Ամենափրկիչ Քրիստոսի կուսանոցը (մոտ 415–416–ին, այժմ՝ Մարսելում): Հեղինակ է ասկետ. և դոգմատիկ–բանավիճ. ստեղծագործությունների:

ՀՈՎՀԱՆ ԿԼԻՄԱՔՈՍ (Հովհան Սինայեցի, մինչև 579–մոտ 650), բյուզանդացի գրող, ճգնակյաց վանական, Սինայի Սբ Եկատերինա մենաստանի վանահայր, համաքրիստ. սուրբ: Հեղինակ է հայտնի ճգնավոր–դիդակտիկ. «Սանդուղք» տրակտատի, որը վանականության հոգևոր կյանքի ուղեցույց է:

ՀՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ, VII դ–ի մատենագիր: Կազմել է «Պատմութիւն Տարօնոյ» երկասիրությունը (1–ին մասը վերագրվում է ***Զենոբ Գլակին***, հրտ.՝ 1719)՝ ***Ներսես Գ Տայեցու*** հանձնարարությամբ: Երկում ներկայացված են VI դ–ի վերջին և VII դ–ի 1–ին կեսին Տարոնում տեղի ունեցած իրադարձությունները, հատկապես՝ Սասանյան Պարսկաստանի դեմ հայերի՝ 571–572–ի ապստամբությունը, արաբ. 1–ին արշավանքները ևն:

ՀՈՎՀԱՆ ՄԱՅՐԱԳՄԱՆԵՑԻ, Մայրագոմեցի (մոտ 572–650), եկեղեց. գործիչ, փիլ–աստվածաբան: Պայքարել է Հայաստանում քաղկեդոնականության տարածման դեմ: 634–ին ընդհարվել է ***Եզր Ա. Փառաժաևկերտցու*** հետ, բանադրվել է ու արտաքսվել Դվինից: Քարոզել է ծայրահեղ անապականություն (այս տեսությունից սկիզբ է առել մայրագոմեցիների աղանդը՝ Հ. Մ–ու աշակերտ Սարգսի գլխավորությամբ): Գրել է «Խրատ վարդուց» (սխալմամբ հրատարակվել է «Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի ճառք» վերնագրով, 1836) բարոյախոս. գրվածքը, «Վերլուծութիւն կաթողիկէ եկեղեցւոյ եւ որ ի նման յաւրինեալ կարգաց» եկեղեց. խորհրդածեսերի մեկնությունը, «Հաւատարմատ», «Նոյեմակ» գրքերը, «Ողբ» չափածո երկը ևն: Հ. Մ–ու կարծիքով՝ հաս–յունը իդեալ. ու ցանկալի կլինի մասնավոր սեփականության բացակայության պայմաններում, ինչպես քրիստ. նախն. համայնքներում էր:

ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵՔԵՐԱՆ, Հովհաննես Ոսկեբերան (մոտ 347/357–407), բյուզ. եկեղեցու ասորի գործիչ, հռետոր, քարոզիչ: Ընդհանր. եկեղեցու նշանավոր հայրապետներից, ՀԱԵ տոնելի սուրբ, Կ. Պոլսի պատրիարք (398–404): «Ոսկեբերան» մականունն ստացել է պերճախոսության համար: Հ. Ո–ին մեծ հոչակ են բերել հաս. անարդարության դեմ համարձակ քննադատությունը և մաքրակենցաղության իր իդեալների իրականացման համար պայքարը: Գրել է ճառեր հեթանոսների, արիոսականների, հուդայականության կողմնակիցների դեմ, քարոզներ, մեկնություններ, ներբողներ՝ նվիրված Հին կտակարանի մեծ սրբերին, Պողոս առաքյալին, Անտիոքի եկեղեցու հայրապետներին, Գրիգոր Լուսավորչին, մարտիրոսներին, թղթեր ևն: Հ. Ո–ի երկերի մեծ մասը հայ. է թարգմանվել դեռևս V դ–ում և զգալիորեն նպաստել հայ քարոզչ. և հռետոր. մտքի զարգացմանը:

ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑԻ, մականունը՝ **Կախիկ** (1315–1386), աստվածաբան, փիլ., րաբունապետ: 1373–ին հիմնադրել է ***Տաթևի համալսարանը***, խորացրել է ***Հովհաննես Սարկավագից*** եկող գիտափիլ. գիտելիքի և աստվածաբանության ոլորտների սահմանազատման էմպիրիկ–սենսուալիստ. ու մատերիալիստ. ուղղվածությունը: Հեղինակ է փիլ–մեկնող. երկերի, աստվածաբան. մեկնությունների, քարոզների, ճառերի, որոնց բնորոշ է փիլ–բնագիտ. մտածողությունը: Հ. Ո–ու ուսմունքի հիմքը Արիստոտելի իմացաբանությունն ու տրամաբանությունն են: Նրա նոմինալիստ. դիրքորոշումները դարձել են ազգ. եկեղեցու և հայ ժողդ–ի ինքնուրույն պայքարի տես. հիմքը: Հ. Ո–ու փիլ–յունը միջնադար. փիլ. մտքի կարևորագույն նվաճումներից է: Հեղինակ է «Հաւաքեալ ի բանից իմաստասիրաց» (հրտ.՝ Ս. Արևշատյանի և Ս. Լալաֆարյանի, ԲՄ, 1956, № 3), «Վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտէլի» (հավաք. տեքստը և առաջաբանը՝ Վ. Չալոյանի, 1956) և այլ աշխ–ների:

ՀՈՎՀԱՆ ՖԻԴԱՆՑԱ, Զովաննի Ֆիդանցա (մականունը՝ **Բոնավենտուրա** (Bonaventura, մոտ 1217/21–1274), իտալացի փիլ. և աստվածաբան, ֆրանցիսկյան միաբանության գեն., ապա՝ կարդինալ: Կաթոլիկ եկեղեցու գաղափարախոս և ուղղափառ–միստիկ. ուղղության ներկայացուցիչ: Դասավել է սրբերի և եկեղեցու 5 մեծագույն ուսուցիչների շարքը:

Հայ իրականության մեջ Հ. Ֆ–ի հայացքները տարածել են Ծործորի դպրոցի որոշ ներկայացուցիչներ (XIV դ–ի 1–ին կես): Ծործորի հայ–ֆրանցիսկյան վանքում գործող իսպանացի քարոզիչ և գիտնական Ֆրա Պոնցիուսը հայ ունիթոր վրդ. Իսրայելի հետ լատ–ից հայ. է թարգմանել Հ. Ֆ–ի «Վասն սրբոյն Ֆրանցիսկոսի» վարքագր. աշխ–ը (1339):

ՀՈՎՀԱՆՆԱՎԱՆՔ, ճարտ. համալիր ՀՀ Արագածոտնի մարզի Օհանավան գ–ում՝ Քասաղ գետի ձորեզրին: Ըստ ավանդության՝ վաղ միջնադարում հիմնադրել է Գրիգոր Ա Լուսավորիչը: Պահպանվել է ինագույն Սբ Կարապետ միանավ եկեղեցին (V դ.): Վաչե Վաչուտյանի հովանավորությամբ կառուցվել է Կաթողիկե եկեղեցին (1221): XVII դ–ում հիմնադրվել է հոգևոր դպրոց, կառուցվել են նոր առաջնորդարան, սեղանատուն, տնտ. շինություններ, նորոգվել են եկեղեցիները, գավիթը, պարիսպը: Վանքը 1918–ի երկրաշարժից մասնակիորեն ավերվել է: 1938–54–ին կատարվել են ամրակայման աշխ–ներ, 1993–ին ավարտվել է Կաթողիկե եկեղեցու ամբողջ. վերականգնումը:

ՀՈՎՀԱՆՆԱՎԱՆՔԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, ինագույն մշակութ. կենտրոն ***Հովհաննավանքում***: Հիշատակվում է V դ–ից. ըստ ավանդության՝ ***Ղազար Փարպեցին*** այստեղ է գրել իր երկը: VI դ–ի կեսերին հիշվում է Գևորգ Մանկիկը, VII դ–ից՝ Ներսես գրիչը, XII դ–ում այստեղ է գործել ***Գրիգոր Տուրևորդին***, XV դ–ում՝ Գաբրիել վարժապետը, XVII դ–ի 2–րդ կեսին՝ ***Զաքարիա Քանաքեռցին***, և ուր.: Հ. գ. կ–ում ուսումնասիրել են տոմար. արվ., փիլ., երաժշտություն: Հ. գ. կ–ում ընդօրինակված շուրջ 20 ձեռագիր պահվում է Մոնդ–ում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ, XII դ–ի ճարտ.: Կառուցել է ***Սրվեղի վանքի*** Սբ Նշան եկեղեցին (1152, ՀՀ Տավուշի մարզի Այգեհովիտ գ–ից 3 *կմ* արմ.), նաև հայկ. աղյուսաշեն մեկ եկեղեցի:

ՀՈՎՀԱՆՆԵՍ, XII–XIII դդ–ի ճարտ.: Հիշատակված է ***Գոշավանքի*** գավթի ներսի հս. կամարներից մեկի վրա՝ ճարտ. ***Մխիթար Հյուսնի*** հիշատակարան–արձանագրության մեջ: Ենթադրվում է, որ Հ. եղել է նրա օգնականը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ, XIII դ–ի մանրանկարիչ, գրիչ: Կիլիկիայի մանրանկարչության դպրոցի ներկայացուցիչ: Գործել է Հռոմկլայում: Կոստանդին Ա Բարձրբերդցու պատվերով պատկերազարդել է 1235–ի (ՎննՄՄ մնդ., ձեռ. № 833) և 1253–ի (Ֆրիր պատկերասրահ, Վաշինգտոն, ձեռ. № 44.17) Ավետարանները: Զարդապատկերները կատարված են ոսկե ֆոնի վրա:

ՀՈՎՀԱՆՆԵՍ, Հաննա էլ Արմանի, Հովհաննես Երուսաղեմցի, XVIII դ–ի նկարիչ: Ստեղծագործել է հիմնականում Կահիրեում: Ղպտի եկեղեցիներում և արվ–ի թանգարաններում պահպանվել է նրա 1721–84–ին թվագրված մոտ 320 աշխ.: 1740–ական թթ–ին որոշ գործեր կատարել է արաբ նկարիչ Իբրահիմ էլ Նասիխի հետ («Միքայել հրեշտակապետ», «Քրիստոսը գահի վրա», «Աստվածամայրը»): Հ–ի վերջին շրջանի նկարներն աչքի են ընկնում գեղ. ինքնատիպությամբ («Ս. Գևորգ», «Ս. Մինաս» ևն): Որդին՝ **Հովսեփը** (Կերգես), նույնպես նկարիչ էր:

ՀՈՎՀԱՆՆԵՍ Ալան (Չաքմաքչյան Ալան Հարությունի, 1911–2002), կոմպոզիտոր: Ամերիկ. ակադ–ի և գրկ–յան ու արվ–ի ինստ–ի (1977–ից), ՀԿՄ պատվ. անդամ (1992–ից): Հեղինակ է օպերաների («Պերիկլես», 1975, ևն), «Հիսուսի ճանապարհը» (1974) օրատորիայի, սիմֆոնիաների (№ 8 «Արջունա», 1947, ևն), կոնցերտների, կամեր., դաշնամուր. («Մադրասյան սոնատ», 1961, «Ֆանտազիա՝ ըստ ճապոնական փայտագրությունների», 1963, ևն), վոկալ, վոկալ–սիմֆ. երկերի, հոգևոր երգերի ևն: Օգտագործել և մեկնաբանել է հայկ. աշուղ. և հոգևոր երաժշտության ավանդույթները («Սուրբ Վարդան», 1964, սիմֆոնիա, «Անահիտ», 1946, ֆանտազիա, կոնցերտներ ևն): Արմ. արդի երաժշտությունը հարստացրել է հայկ. երաժշտության տարրերով:

ՀՈՎՀԱՆՆԵՍ Դավիթ (Հովհաննիսյան Դավիթ Հրաչյայի, 1945–2016), բանաստեղծ, խմբ–հրտ., թարգմանիչ: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2008): Հրաչյա ***Հովհաննիսյանի*** որդին: 1991–99–ին՝ «Արևիկ» հրտչ–յան տնօրեն: Հեղինակ է «Երգերի պսակ» (1974), «Անցյալ կորուսյալ» (1979), «Նոր կյանք» (1983), «Տագնապներ» (1986), «Մայր Հայաստան» (1988), «Աղետի գոտի» (1989), «Քրոնիկոն» (1996), «Requiem Aeternam Չարենցի հիշատակին» (1997), «Նոր քրոնիկոն» (2007), «Նոր տագնապներ» (2014) քնարախոհ., հայրենասիր., փիլ. բանաստեղծությունների ժող–ների:

ՀՀ Պետ. մրց. (2007), ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ» մեդալ (2006):

ՀՈՎՀԱՆՆԵՍ I ՉՄՇԿԻԿ (մոտ 925–976), Բյուզանդիայի կայսր՝ 969–ից՝ Կուրկուասների նշանավոր տոհմից: 971–ին պարտության է մատնել Թրակիա ներխուժած Կիևյան Ռուսիայի մեծ իշխան Սվյատոսլավին և Բուլղարիայի հս–արլ. մասը կցել կայսրությանը: 972–ին, դաշինք կնքելով Հռոմ. սրբազան կայսրության հետ, արշավել է արաբների դեմ, գրավել Մծբինը, Հս. Միջագետքը, 974–975–ին՝ Էմեսսան (Հոմս), Բաալբեկը, մտել Պաղեստին և Լիբանան, փորձել է գրավել Բագրատունյաց Հայաստանի մի շարք շրջաններ, բայց ***Աշոտ Գ Ողորմածը*** 80–հզ–անոց բանակով շարժվել է ընդառաջ, և նրանք հաշտություն են կնքել:

ՀՈՎՀԱՆՆԵՍ II Բարի (Jean II le Bon, 1319–1364), Ֆրանսիայի թագավոր՝ 1350–ից՝ Վալուաների հարստությունից: Հաջորդել է հորը՝ ***Ֆիլիպ VI***–ին: Հարյուրամյա պատերազմի ընթացքում՝ 1356–ի Պուատիեի ճակատամարտում, գերվել և տարվել է Լոնդոն: 1360–ի Անգլիայի հետ Բրետինյի հաշտությունից հետո վերադարձել է Փարիզ: 1364–ին, անգլիացիներին փրկագինը չվճարելու և նրանցից իր պատանդ որդու փախչելու պատճառով, կրկին վերադարձել է գերության:

ՀՈՎՀԱՆՆԵՍ II ԿՈՄՆԵՆՈՍ (1087–1143), Բյուզանդիայի կայսր՝ 1118–ից: Հաղթա–

նակներ է տարել պեչենենգների (1122), սերբերի (մոտ 1124), հունգարների (1129), սելջուկների (1135) դեմ մարտերում: Անտիոքում հաստատել է Բյուզանդիայի գերիշխանությունը (1137):

ՀՈՎՀԱՆՆԵՍ VI ԿԱՆՏԱԿՈՒԶԻՆ (մոտ 1293–1383), Բյուզանդիայի կայսր՝ 1341–1354-ին: 1341-ին, լինելով մանկահասակ Հովհաննես V Պալեոլոգոս կայսեր խնամակալը, գլխավորել է ավատատեր ազնվականների ապստամբությունը, նվաճել կայսեր. գահը: Գահազրկվելուց հետո ընդունել է կուսակրոնություն՝ Հովասաֆ անունով, ապրել վանքում, շարադրել է 1320–56-ի կարևոր իրադարձությունները:

ՀՈՎՀԱՆՆԵՍ XXIII (Giovanni, 1881–1963), Հռոմի պապ՝ 1958-ից: Փորձել է արդիականացնելու եղանակով կաթոլիկ եկեղեցին համապատասխանեցնել ժամանակի պահանջներին: 2014-ին սրբադասվել է:

ՀՈՎՀԱՆՆԵՍ Ա ՄԱՆԴԱԿՈՒՆԻ, սուրբ Հովհան Մանդակունի (մոտ 403–490), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 478-ից: Սահակ Ա Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից: Գործակցել է Վահան Մամիկոնյանի հետ և հայրապետ. քարոզներով գոտեպնդել հայ ռազմիկներին Ներսեհապատի ճակատամարտում (482): 484-ին կաթողիկոս. աթոռը Վաղարշապատից փոխադրել է Դվին: Կազմել է «Մաշտոց» ծիսամատյանը, ընդարձակել Ժամագիրքը: Զբաղվել է տնտ. և շին. գործերով:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՆԿՅՈՒՐԱՑԻ, Զուաննի Մոլինո, XVII դ–ի տպագրիչ, հաս. գործիչ: 1630-ական թթ–ի կեսին՝ Զմյուռնիայում Վենետիկի դեսպանի թարգման, 1637–41-ին՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքի ներկայացուցիչը Հռոմում: 1642-ին Վենետիկում՝ հույն Սալիգաթաուի տպարանում, իր պատվիրած տառերով տպագրել է Սաղմոսարան, 1643-ին՝ Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» պոեմը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՆՀՈՂ (John Lackland, 1167–1216), Անգլիայի թագավոր՝ 1199-ից՝ Պլանտագենետների հարստությունից: 1202–04-ին կորցրել է Ֆրանսիայում անգլ. հողերի մեծ մասը (այդտեղից՝ անունը): Բարոնների ճնշման տակ 1215-ին ստորագրել է Ազատությունների մեծ խարտիան:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՆՎԱԽ (Jean sans Peur, 1371–1419), Բուրգունդիայի հերցոգ՝ 1404-ից: 1407-ին կազմակերպել է Լյուդովիկոս Օռլեանցու սպանությունը, որից հետո դարձել է Ֆրանսիայի փաստացի կառավարիչը: 1415-ին վերսկսված հարյուրամյա պատերազմի ժամանակ, որպես Անգլիայի դաշնակից, 1419-ին գրավել է Փարիզը: Սպանվել է 1422-ին՝ դոֆին Կառլոս XII–ի հետ բանակցությունների ժամանակ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔՅԱԼ, Հովհաննես Ավետարանիչ, Հովհաննես Աստվածաբան, Հիսուս Քրիստոսի 12 առաքյալներից, *Հակորոս առաքյալի* կրտսեր եղբայրը, Հիսուսի սիրելի աշակերտը: Ավանդ. քրիստ. եկեղեցիները նրան են վերագրում Հայտնության և Հովհաննեսի 3 ընդհանր. թղթերը (Նոր կտակարան, Ավետարան ըստ Հովհաննեսի): Հ. առաջին ականատեսն է եղել Քրիստոսի Հարության (թափուր գերեզմանի): Առաքյալներից միակն է, որը չի մահացել նահատակությամբ: Համաքրիստ. եկեղեցու մեծագույն սրբերից է: Նրա անունով կան բազմաթիվ եկեղեցիներ: Հ. ա–ի տոնը նշում են բոլոր ավանդ. եկեղեցիները, ՀԱԵ-ն՝ Սբ Ծննդին նախորդող Ավագ տոների ժամանակ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳԵՐԵՑ ԼԵՀԱՑԻ, XIII դ–ի 1-ին կեսի ժամանակագիր: Նրա ժամանակագրությունը (կազմել է 1225-ին) ընդգրկում է համաշխ. պատմության մ. թ. սկզբից մինչև 1032-ի զանազան իրադարձությունների համառոտ նշումներ (յուրահատուկ):

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԾԿԵՑԻ, XV դ–ի 2-րդ կեսի գրիչ: Սովորել և գործել է Մեծոփավանքի գրչության դպրոցում: Ընդօրինակություններ է կատարել Արծկեում, Բաղեշում, Մազութում, Կաժում և այլուր: Ընդօրինակությունների (պահվում են Երևանի, Վենետիկի մատենադարանում, ԱՄՆ–ի, Ս. Պետերբուրգի թանգարաններում) վերջում զետեղել է իր հիշատակարանները (հաճախ՝ չափածո):

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՃԻՇԵՑԻ, Ոսպնակեր (ծ. թ. անհտ–1327), գրիչ, քարոզիչ, մատենագիր: Գրել է «Մեկնութիւն Պատարագի», որը Խոսրով Անձևացու և Ներսես Լամբրոնացու նույնանուն երկերի համառոտագրությունն է, և այլ գործեր:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՔԱԵԼԲԱՅՐ (1220-ական թթ.–1289), կրթ. և մշակույթի գործիչ, րաբունապետ, բանաստեղծ, խմբ., գրիչ, ծաղկող: *Հնթում Ա*-ի կրտսեր եղբայրը (այստեղից էլ՝ Արքաեղբայր անունը): Մկրտության անունը՝ Պաղտին: 1259-ից՝ Լեռն. Կիլիկիայի Սիլևոն և Բարձրաբերդ գվռ-ների հոգևոր առաջնորդ-արք.: Գռների գրչության դպրոցի հիմնադիր-րաբունապետը: Այստեղ և Ակներում Հ. Ա. կատարել է թարգմ-յուններ, հնագույն ձեռագրերի վերծանություններ և սրբագրություններ, ընդօրինակումներ, պատկերազարդումներ (1272, 1287 և 1289-ի Ավետարանները): Շուրջ 20 ձեռագիր Մտնդ–ում է:

ՀՈՎՀԱՆՆԵՍ Բ ԳԱԲԵՂԵՆՑԻ (Գաբեղյան, ծ. թ. անհտ–574), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 557-ից: Պայքարել է նեստորականության և քաղկեդոնականության դեմ: 571-ին զորավար *Վարդան Մամիկոնյանի* (Կարմիր Վարդան) հետ գլխավորել է Կ. Պոլիս մեկնած հայոց պատվիրակությունը՝ Պարսկաստանի դեմ պատերազմում Բյուզանդիայից օգնություն խնդրելու նպատակով: 572-ին Կ. Պոլսում հիմնադրել է հայոց առանձին կրոն. համայնք:

ՀՈՎՀԱՆՆԵՍ Բ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ (ծ. թ. անհտ–1525), Կիլիկիայի հայոց կաթողիկոս՝ 1489-ից: Սսի անապահով վիճակի պատճառով մեծ մասամբ եղել է Հալեպում: Նրան են վերագրվում Հալեպի եկեղեց. մի շարք կառույցներ: Զբաղվել է նաև Երուսաղեմի հայոց պատրիարքության գործով, որի համար կոչվել է նաև «Կաթողիկոս Երուսաղեմի»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ Գ ՕԶՆԵՑԻ, սուրբ Հովհաննես Օձնեցի, Հովհան Իմաստասեր (ծ. թ. անհտ–728, ամփոփված է իր կառուցած Սբ Հովհաննես եկեղեցում), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 717-ից: 719-ին մեկնել է Դամասկոս՝ Օմար ամիրապետի մոտ: 719–720-ին Դվինի ժողովում ընդունել է պավլիկյանների դեմ ուղղված կանոն: 726-ին Մանազկերտում հրավիրել է եկեղեց. ժողով, որը կանոն. օրենսդրությամբ վավերացրել է հայերի և ասորիների միաբնակ եկեղեցիների միասնությունը: Առաջին անգամ հայ իրականության մեջ կազմել է «Կանոնագիրք Հայոցը», որը նրա եկեղեց. բարեփոխումների ամփոփումն ու հաստատումն էր:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻՉ, XI դ–ի գրիչ: 1069-ին Նարեկավանքում Անանիա Վարագացու համար ընդօրինակել է Մեսրոպ Մաշտոցի գրած մի Ավետարան (Մտնդ., ձեռ. № 10434):

ՀՈՎՀԱՆՆԵՍ Դ ՕՎԱՅԵՑԻ (ծ. թ. անհտ–855), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 833-ից: Գահակալման 8-րդ տարում (841) գահազրկել է *Բագարատ Բագրատունին*: Հ. Դ Օ. հաստատվել է Այրիվանքում (Գեղարդավանք): Սակայն նախարարների ժողովում վերահաստատվել է կաթողիկոս. գահին:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴԱՄԱՍԿՈՑԻ (մոտ 675–մոտ 749), բյուզանդացի աստվածաբան, փիլ., բանաստեղծ, հունալեզու հայրաբանության համակարգողներից, պատկերամարտության գաղ. հակառակորդներից: Փիլ–աստվածաբան. «Գիտելիքի աղբյուր» աշխ–յան մեջ զուգակցել է անտիկ և քրիստ. մտածելակերպի բնորոշ գծերը: «Դիալեկտիկա» («Տրամաբանություն») երկի համառոտ տարբերակը թարգմանել է Բագարատ Մամիկոնյանը (X դ.), իսկ ամբողջությամբ՝ Սիմեոն Պղնձավանեցին (վրաց–ից, XIII դ.): Հ. Դ. հեղինակ է նաև ասկետ., աստվածաբան. տրակտատների (հատկապես՝ մահմեդականության դեմ, որը համարել է քրիստ. հերետիկոսություն):

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴԱՐԹԵԼ ԺԱՆ, XIV դ–ի ֆրանսիացի ժամանակագիր, հոգևորական: 1377-ին Երուսաղեմ մեկնելիս Կահիրեում հանդիպել է սուլթանության զորքի գերեվարած *Լևոն Զ Լուսինյանին*: Նրա ջանքերով Լևոն Զ–ն գերությունից ազատվել (1382) և մեկնել է Վենետիկ: Հեղինակ է ժամանակագրության, որտեղ համառոտ շարադրել է Կիլիկիայի հայկ. պետության պատմությունը՝ մինչև Լևոն Զ–ի գերեվարությունը (1375) և դրան հաջորդած անցքերը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ Ե ԴՐԱՄԽԱՆԱԿԵՐՏՑԻ (845–850-ի միջև–մոտ 929), պատմիչ, Ամենայն հայոց կաթողիկոս՝ 898-ից: Հայաստանի վրա Ատրպատականի ամիրա Յուսուֆի արշավանքը կանխելու նպատակով, Հայոց թագավոր *Սմբատ Ա*-ի հրահանգով, 908-ին մեկնել է Ատրպատական՝ բանակցելու, սակայն ձերբակալվել է և բանտարկվել: Բանտից փախել է, վերադարձել ու հաստատվել է Տարոնում: Հ. Ե Դ–ու «Պատմութիւն Հայոց» (հրտ.՝ 1843) աշխ–յունն ընդգրկում է Հայաստանի պատմությունը նախն. ժամանակներից մինչև 924-ը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԿԱՐՈՂ, XVI դ–ի քարգործ վարպետ: ՀՀ Կոտայքի մարզի Առինջ գ–ի հս–ում ավերակ բերդի պարսպի մեջ գտնված մեծ սև սալաքարի վրա քանդակված է արծիվ, շուրջը՝ Հ. Ե. Ն–ի անունն ու թվականը՝ ՋԾ (1501):

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ, Ծործորեցի (մոտ 1270–ական թթ.–1338), փիլ., մեկնիչ, քերական, բանաստեղծ: Գրել է մեկնություններ, քարոզներ, թղթեր, բանաստեղծություններ, ընդօրինակել իմաստասիր. երկեր: Նպաստել է Հայաստանում կաթոլիկության տարածմանը: Կրել է Թովմա Աքվինացու ազդեցությունը (1321-ին թարգմանել է վերջինիս «Փիրք խորհրդոց եկեղեցւոյ» երկը): «Համառօտ տեսութիւն քերականի» աշխ–յան մեջ սահմանել է

քերակ., գր., գրականագիտ. հասկացություններ, կատարել նախորդ թարգմյունների որոշ ճշգրտումներ, իմաստասիր., լեզվ. ստուգաբանություններ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ Պլուզ (1230–1293), փիլ., տաղերգու, մատենագիր, քերական, մանկավարժ, հայ փիլ-յան բնագիտ. ուղղության խոշորագույն ներկայացուցիչ: Հ. Ե. մշակել է եկեղեց. հատուկ կանոններ՝ ունիթորության դեմ պայքարելու համար: Գրել է ավելի քան 100 չափածո և արձակ գեղ. երկեր: Հ. Ե. կրոն., աշխարհիկ, գիտ. բազմաթիվ տաղերի, քառյակների, ողբերի, շարականների հեղինակ է: Ուսումնասիրել է նաև բժշկություն ու դեղագործություն, մշակել է դաստիարակչ. մեթոդներ: Հեղինակ է «Տետրակ համառօտ եւ լի իմաստնախոհ բանիւք...», «Յաղագս երկնային շարժմանց...» (1792) երկերի:

ՀՈՎՀԱՆՆԵՍ Զ ՍՍԵՑԻ (ծ. թ. անհտ–1221), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1203–ից: Եղել է Սսի արք., Դրազարկի վանքի վանահայր: Գումարներ է հատկացրել Հռոմկլայի բերդի ամրացման համար: 1218–ին Լևոն Բ–ի խնդրանքով կաթողիկոս. աթոռը Հռոմկլայից տեղափոխել է Դրազարկի վանք:

ՀՈՎՀԱՆՆԵՍ Է ԱՋԱԿԻՐ (ծ. թ. անհտ–1506), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1474–84–ին: Հ. Է Ա–ի օրոք Աղթամարի կաթողիկոսարանից Սբ Էջմիածին է վերադարձվել Գրիգոր Ա Լուսավորչի աջը, որի համար էլ նա ստացել է «Աջակիր» մականունը: Նահատակվել է (ըստ Օրմանյանի) դավանափոխ լինելու առաջարկը մերժելու պատճառով:

ՀՈՎՀԱՆՆԵՍ Ը ԿԱՐԲԵՑԻ (1762–1842), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1831–ից: Հայոց կաթողիկոսներից առաջինն էր, որին տրվել է թվահամար մակդիր (Հովհաննես Ութերորդ). տարածվել է նաև իր հաջորդների վրա: Նրա օրոք՝ 1836–ին, հաստատվել է «Պոլոժենիեն», կառուցվել Էջմիածնի Սինոդի շենքը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՑԻ, XIV դ–ի 2–րդ և XV դ–ի 1–ին կեսի քնարերգու: Գրել է տաղեր, երգանակավորել և երգել դրանք: Պահպանվել են սիրո և բնության, խրատաբարոյախոս., վիպ. տաղեր, կրոն. ոտանավորներ («Տաղ գարնան», «Վասն քահանայից եւ առաջնորդաց ասացեալ» ևն): Առաջին հայ տաղերգուն է, որ մշակել է ժող. բանահյուսությունից քաղված թեմաներ: Գործերն աչքի են ընկնում նուրբ, բազմերանգ ու բանաստեղծ. արվ–ով, արտահայտչ. ձևերի ու պատկերների օգտագործմամբ: Հ. Թ–ու տաղերը թարգմանվել են ռուս., անգլ. ու ֆրանս.:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՐՈՒՆՑԻ, Վանեցի, Արևելցի (ծ. թ. անհտ–1703): 1663–ին և 1665–67–ին՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք, 1670–72–ին՝ Աղթամարի կաթողիկոս: Գժտվելով Հակոբ Դ Ջուղայեցու հետ՝ հարել է նրա հակառակորդ Եղիազար Ա Այնթապցուն: 1664–ին հեռացվել է պաշտոնից, այնուհետև Վասպուրականում եղել է Վարագի, Սալնապատի և Հոգյաց վանքերի առաջնորդը: 1666–ին կազմակերպել է *Սահմեւի Մուրատ Բաղիշեցու* առաքելությունը Ֆրանսիա: 1678–80–ին եղել է Եթովպիայում, հետագայում շարադրել է իր ուղևորության նկարագրությունը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽԻԶԱՆՑԻ, XIV դ–ի վերջ–XV դ–ի սկզբի գրիչ, մանրանկարիչ: Վասպուրականի մանրանկարչության դպրոցի ներկայացուցիչ: Գործել է Խիզան ք–ում: Նրա 1390–1400–ական թթ–ին ընդօրինակած և պատկերազարդած ձեռագրերից 12–ը (7 Ավետարան, մյուսները՝ Նարեկ, Մաշտոց, Աստվածաշունչ, Հայսմավուրք, Ճաշոց) պահվում են Մտնդ–ում, 1368–ի Ավետարանը՝ ՎնտՄՄ մտնդ–ում: Հ. Խ. պահպանել և նոր որակ է հաղորդել Վասպուրականի մանրանկարչության խորհրդանշ. բանահյուս. բնույթին:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԾԱՐԵՑԻ, **Հովհաննիսիկ Ծարեցի** (1560–մ. թ. անհտ), ժամանակագիր: Եղել է Արտազի Սբ Թադեի վանքի միաբան, կառուցել տվել Սյունյաց Սոդք գվռ–ի Աղքիլիսա գ–ի Սբ Աստվածածին եկեղեցին: Հ. Ծ–ու «Ժամանակագրություն» ընդգրկում է 1572–1600–ի իրադարձությունները:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՄԵՆԱՑԻ, XVII դ–ի պատմիչ: Ապրել և գործել է Կամենեց-Պոդոլսկում (Ուկրաինա): Հոր՝ տեր Հակոբի հանձնարարությամբ գրել է «Պատմութիւն պատերազմին Խոթինու» աշխ–ը, որն արժեքավոր տեղեկություններ է պարունակում Խոթին ք–ի մոտ թուրք նվաճողների դեմ լեհ–ուկր. զորքերի հաղթ. ճակատամարտի (1621), գինադադարի կնքման և այլ իրադարձությունների մասին: Վերջին գլխում նկարագրված է Օսման II սուլթանի սպանությունը (1622) Կ. Պոլսում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ, ճարտ. համալիր ՀՀ Արարատի մարզում՝ Ուրծի լ–ների փեշին: Վանքի Սպիտակավոր Սբ Աստվածածին եկեղեցին (1301, ճարտ.՝ Բուտ) 1 զույգ որմնամույթով գմբեթավոր դահլիճ է: Եկեղեցուց հվ արմ. ժամատունն է (XIV դ.), որին արմ–ից կից է երկհարկ եկեղեցի–դամբարանը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐՆԵՑԻ (մոտ 1750–ական թթ.–1820–ական թթ–ի սկիզբ), տաղասաց, մանկավարժ: Հեղինակ է «Յաղագս ումեմն Սիսըր կոչեցեալ Սահակ մանկան...» (1788), «Յաղագս Վաւվառ անուն ումեմն արիասիրտ աղջկան...» (1810) վկայաբան–էպիկ. պոեմների, 130 տաղերի («Տաղ սիրոյ», «Ի սէր սիրելոյդ», «Տապ սիրոյ քո գիս տոչորեաց» ևն), քառյակների, հոգևոր երգերի, հայատառ թուրք. խաղերի: Թարգմանել է հայ–ից թուրք. և հակառակը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈՋԵՒՆ, Տարոնացի, XI դ–ի 1–ին կեսի գիտնական, տոմարագետ: Համարվել է ժամանակի գերագույն գիտնական, հայտնի է եղել «Հայոց վարդապետ» պատվանունով: *Հովհաննես Սմբատի* հրամանով 1022–ին *Պետրոս Ա Գետադարձի* հետ մեկնել է Տրապիզոն, բանակցություններ վարել Բյուզանդիայի կայսր Վասիլ II–ի հետ: *Սեպտեմս Ուռհայեցու* հավաստմամբ՝ Հ. Կ. գրել է «Գիր հաւատոց» և «Պատմութիւն Բագրատունեաց» երկերը (չեն պահպանվել), ինչպես նաև տոմարագիտ. աշխ–ներ («Մենկնութիւն տոմարի») ևն:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԼՈՏ ԲԱՂԻՇԵՑԻ, **Հովհաննես Թ** (1678–1741), Կ. Պոլսի հայոց պատրիարք՝ 1715–ից, եպս.՝ 1726–ից: Հաստատել է (1715) Երուսաղեմի հայոց պատրիարք. աթոռի ինքնուրույնությունը: Հ. Կ. Բ–ու օրոք զարթոնք է ապրել Կ. Պոլսի հայոց ազգ., մշակութ., կրթ. կյանքը, նրա աջակցությամբ բացվել են տպարաններ, հրատարակվել են 80–ից ավելի գրքեր:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՄՇԵՆՑԻ (ծ. թ. անհտ–1497), մանկավարժ, փիլ.: 1460–ական թթ–ի սկզբին եղել է Ավագ վանքի դպրոցի (Դարանաղի գվռ) ռաբունապետը, դպրոցը վերափոխել է համալսարանի: Նրա սաներից շատերը (Գրիգոր Կաֆայեցի Ծաղկող, Ներսես Բաղիշեցի, Ներսես Հաղբացեցի, Խաչատուր Երզնկացի և ուր.) դարձել են նշանավոր բանաստեղծներ, նկարիչներ, երաժիշտներ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՍԱՆ–ՋԱԼԱԼՅԱՆ (ծ. թ. անհտ–1787), Գանձասարի կաթողիկոս՝ 1763–87–ին, ազգ–ազատագր. շարժման գործիչ: *Եսայի Հասան–Ջալալյանի* եղբորորդին: Գործակցել է Հովսեփ Էմինի, հնդկահայ ազատագր. խմբակի (Շահամիր Շահամիրյան, Մովսես Բաղրամյան) և ռուսահայ գործիչների (Հովակիմ Լազարյան, Հովսեփ Արղության) հետ: Հ. Հ–Ջ–ի ռուս. կողմնորոշումը հարուցել է Շուշիի Իբրահիմ խանի թշնամանքը, որը 1787–ի գարնանը հարձակվել է Գանձասարի վրա, կողոպտել կաթողիկոսարանը, կալանավորել Հ. Հ–Ջ–ին և սպանել տվել Շուշիի բանտում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԵՐՄՈՆԵՑԻ, **Կոլոտիկ** (ծ. թ. անհտ–1443), Հերմոնի վանքի առաջնորդ, բարունապետ, մատենագիր: *Գրիգոր Տաթևացու* մահից հետո դարձել է Տաթևի դպրոցի ուսուցչապետ և մեծ վրդ.: 1430–ական թթ–ին *Թովմա Մեծոփեցու* հետ պայքարել է Հայոց կաթողիկոսությունը Սսից Էջմիածին տեղափոխելու համար, վճռական դեր կատարել *Կիրակոս Ա Վիրապեցու* գահընկեցության և *Գրիգոր Ժ Զալալրևկյանցի* կաթողիկոս ընտրվելու գործում: Երկերից առավել արժեքավոր է Եսայու մարգարեության մեկնությունը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈԼՈՎ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԵՑԻ, **Վանանդեցի**, քերական, թարգմանիչ, հրտ., կաթոլիկ եկեղեցու գործիչ, վրդ.: Հեղինակ է «Քնութիւն հայկաբանութեան կամ Քերականութիւն հայկական» (լատ. և հայ., 1674), «Համառօտութիւն ճարտասանականի արհեստի» (1674), «Քերականութիւն լաթինական» (հայ. և լատ., 1675), «Հայելի ճշմարտութեան» (լատ. և հայ., 1680), «Պատասխանատրութիւնք թղթոյ...» (1687), «Պարզաբանութիւն հոգենուագ սաղմոսացն Դաւթի» (1687) և այլ երկերի: Թարգմանել է Թովմա Կեմբացու «Համահետևումն Քրիստոսի» (1674), «Նորագոյն ծաղիկ զօրութեանց» (1675), «Նուագարան երանուիոյ կուսին Մարիամու» (1676), Դոմինիկոս Բոհուրսիի «Խոկումն քրիստոնէական» (1687) երկերը, Խորհրդատետր (1690) ևն:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆԿԱՄԱՐԵՆՑ (1415–1501), գրիչ: Աշակերտել է *Թովմա Մեծոփեցուն*: Արձեշում հիմնադրել է գրչության դպրոց: 72 տարի զբաղվել է գրչարվ–ով: Ընդօրինակել է 40 Հայսմավուրք ու Տարեգիրք, 32 Ավետարան և այլ ձեռագրեր, պահպանվել են 30–ը (13–ը՝ Երևանի, 5–ը՝ Վենետիկի, 2–ը՝ Նոր Ջուղայի մտնդ–ներում):

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿ ԽԼԱԹԵՑԻ (ծ. թ. անհտ – 1438), աշուղ: Ստացել է աշուղ. արվ–ի հիմնավոր կրթություն: Ունեցել է հազվագյուտ ձայն, կատարել է աշխարհիկ և հոգևոր երգեր: Սպանվել է երիտասարդ տարիքում՝ կրոնափոխությունը մերժելու համար:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԾՈՓԵՑԻ (1340–1410), մանկավարժ, գրիչ, եկեղեց. գործիչ, վրդ: XIVդ–ի վերջին ղեկավարել է *Մեծոփա–*

վանքի դպրոցը: Ընդօրինակել է փիլ. բովանդակությամբ ձեռագիր (Մտնդ., ձեռ. № 5931):

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ (լատ.՝ Iohannes Baptista), ***Մեսիայի*** գալստյան նախավկան քրիստոնեության մեջ, ***Հիսուս Քրիստոսի*** նախակարապետը, կատարել է մկրտության կարգ Հորդանան գետում, այստեղից էլ՝ «Մկրտիչ» անունը: Հ. Մ–ի մասին պատմում են Ավետարանում և Ղուրանում: Հ. Մ. համարվում է Հին և Նոր կտակարանների կամուրջը, նրան անվանում են նաև «Միջնորդ»:

ՀԱԵ Հ. Մ–ին դասում է ամենահայտնի սրբերի շարքը, նրա հիշատակին սահմանել է 4 տոն:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄՐՔՈՒԶ, Հովհաննես Զուղայեցի, Սպահանցի (1643–1715), փիլ., աստվածաբան, տրամաբան, քերական, նկարիչ: 1661–ին ձեռնադրվել է քհն., 1669–ին՝ վրդ.: Հայ. և պարսկ. զուգահեռաբար գրել է 8 մեծածավալ աշխ–ներ, պարսկ. և արաբ. թարգմանել Ավետարանն ու այլ գործեր: Շարունակելով Արիստոտելի, Դավիթ Անհաղթի, ***Սիմեոն Զուղայեցու*** և ուր. տրամաբ. ուսմունքների գաղափարները՝ քննարկել է տրամաբ–յան առարկայի, ուսումնասիրության մեթոդի կարևորության, ինչպես նաև մտահանգումների տեսության հետ կապված մի շարք հարցեր: «Համառօտ քերականութիւն եւ տրամաբանութիւն, որ է քերթութիւն բառի եւ կրթութիւն բանի» (1711) աշխ–յան մեջ իր քերակ. սկզբունքներով հետևել է Սիմեոն Զուղայեցուն: Որպես նկարիչ՝ Հ. Մ. ղեկավարել է Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի Սբ Հովսեփ եկեղեցու գեղանկարչ. ձևավորումը: Հեղինակ է նաև Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու պատկերների («Տաճարի ընծայումը», «Տասներկու տարեկան Հիսուսը քարոզելիս» ևն):

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՈՍԿԵՓՈՐԻԿ (ծ. թ. անհտ–1432), գրիչ, գրչության ուսուցիչ, Անիի եպս., եկեղեց. և մշակույթի գործիչ: Պահպանվել է Հ. Ո–ի ընդօրինակած 3 մատյան [Երևանի (ձեռ. № 1587), Վիեննայի (ձեռ. № 55) և Երուսաղեմի (ձեռ. № 1534) մտնդ–ներ]:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԱՏԿԵՐԱՀԱՆ [Հովհաննես Էմիրի (Հովսեփի), մոտ 1695–1758], նկարիչ, եկեղեց. գործիչ: Նկարներին («Աստվածամոր ծնունդը», 1719, «Գրիգոր Լուսավորիչ», 1720, «Ս. Անտոն Անապատական», 1714, «Ս. Բենեդիկտիոս», 1742, «Խաչելություն», 1742, բոլորը՝ Վնտ. մտնդ–ում), «Ցավագին Տիրամայրը», Սարիա Սաջորե վանք, Ալբանո) բնորոշ են ռոմանտիկ շունչը, կոմպոզիցիայի, հեռանկարի ու գծանկարի խոր զգացողությունը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍ II (Joannes Paulus, 1920–2005), Հռոմի պապ՝ 1978–ից: 1964–ից՝ Կրակովի արք.: 1967–ից՝ կարդինալ: Կաթոլիկ եկեղեցին Հ. Պ. II–ին սրբադասել է (2014): 2001–ին մասնակցել է Հայաստանում քրիստոնեությունը պետ. կրոն հռչակման 1700–ամյակի տոնակատարություններին:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՋՈՒԿԱՅԵՑԻ–ՔԹՈՒՇՆՑ (մոտ 1610–1660), տպագրիչ, մշակույթի և եկեղեց. գործիչ: Աշակերտել է ***Խաչատուր Կաւսարացուն***, որը 1641–ին նրան ուղարկել է Եվրոպա՝ տպագր. գործում մասնագիտանալու: Հռոմից Հ. Զ. Ք. մեկնել է Լիվոռնո, 1644–ին տպագրել է Սաղմոսարան, ապա տպարանը տեղափոխել է Նոր Զուղա, 1647–ին տպագրել Պարզատումար: Այնուհետև ձեռնադրվել է եպս. և նշանակվել Նոր Զուղայի առաջնորդ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՆԱՀՆԵՑԻ, XIV դ–ի վերջ–XV դ–ի սկզբի գրիչ, մանրանկարիչ, հոգևոր–մշակութ. գործիչ, վրդ.: Գործել է Սանահինի վանքում: Առաջին ձեռագիրն ընդօրինակել է 1399–ին, ապա՝ Մանրուսում (1411, Երուսաղեմ): Վերջին անգամ հիշատակվում է 1462–ին գրած մատյանի հիշատակարանում: Նրա ընդօրինակած (նկարազարդած) շուրջ 10 ձեռագրից 5–ը Մտնդ–ում են:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՆԴՂԿԱՎԱՆԵՑԻ, XI դ–ի կեսի գրիչ, մանրանկարիչ: Ստեղծագործել է Արշարունյաց գվռ–ի Սանդղկա վանքում: Գրել ու նկարազարդել է 1053–ի Ավետարանը (ձեռ. № 3793), «***Մեղուս Ավետարանը***» (ձեռ. № 7736), որտեղ հայ գրչարվ–ում առաջին անգամ հանդիպում են լուսանցազարդ, գլխազարդեր և զարդագրեր: 3–րդ ձեռագրում («Բեգունց Ավետարան», ձեռ. № 10099) ծաղկել է (1060) միայն լուսանցազարդերը (3 Ավետարանն էլ՝ Մտնդ.):

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ, **Հովհաննես Իմաստասեր** (1045–1050–ի միջև–1129), աստվածաբան, տոմարագետ, մատենագիր, մանկավարժ: Հիմնադրել և ղեկավարել է Անիի բարձրագույն իմաստասիրաբ. դպրոցը: Մեկնել է անտիկ և քրիստոնյա հեղինակների մի շարք երկեր, գրել փիլ., բնագիտ., գեղ., գեղագիտ., բարոյագիտ., աստվածաբան. աշխ–ներ («Բան իմաստութեան ի պատճառս...», «Ցաղագս անկիւնաւոր թուոց» ևն): Հ. Ս. զբաղվել է հայկ. տոմարի կարգավորման հարցով, նրա կազմած տոմարը կոչվել է Սարկավագադիր (տես ***Հայոց տոմար***): Եղել է XI–XII դդ–ի երևելի երաժշտագետներից ու երգահաններից:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԲԱՍՏԱՑԻ, **Հովհան Սեբաստացի** (մոտ 1765–1829), պատմիչ, բանաստեղծ, եկեղեց. գործիչ: 1812–ից՝ եպս., 1809–30–ին՝ Սեբաստիայի հոգևոր առաջնորդ: Հեղինակ է ոտանավորների, չափածո տապանագրերի («Ներբողական նուագերգութիւնք...», հրտ.՝ 1825), քարոզների (Մտնդ., ձեռ. № 10185), «Պատմութիւն Սեբաստիոյ» (հրտ.՝ 1974) երկի, որն ընդգրկում է 1021–ից մինչև 1830–ական թթ–ի կարևոր իրադարձությունները:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿԻԼԻՅԵՑՈՒ, XI դ–ի II կեսի բյուզանդացի ժամանակագիր: Գրել է «Համառոտություն պատմությանց» աշխ–ը, որտեղ նկարագրել է 811–1057–ի դեպքերը: Հ. Ս–ի «Ժամանակագրությունը» կարևոր տեղեկություններ է պարունակում հայ–բյուզ. հարաբերությունների, Բյուզանդիայում հայերի դերի, հայազգի կայսրերի, Արծրունիների և Բագրատունիների թագավորությունների վերացման ևնի մասին:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄՄԲԱՑ (ծ. թ. անհտ–1041), Հայոց թագավոր՝ 1020–ից՝ ***Բագրատունիների*** արքայատոհմից: ***Գագիկ Ա***–ի ավագ որդին: 1000–ին հոր հրամանով Արծրունի իշխան Ապուսահլից գրավել է Կոգովիտ և Ծաղկոտն գավառները: Հոր մահից հետո Հ. Ս–ի կրտսեր եղբայր Աշոտ Դ–ն գահին տիրելու նպատակով դիմել է Բյուզանդիայի Վասիլ II կայսրի օգնությանը: Նախապատրաստվող հարձակումը կանխելու նպատակով Հ. Ս. 1022–ի հունվ–ին վերջինիս հետ կնքած պայմանագրով Հայոց թագավորի մահից հետո Բագրատունիների թագավորության հողերը կտակել է Բյուզանդիային: 1040–ին մասնակցել է Լոռի ներխուժած Դվինի ամիրա Աբուլ–Ասվարի զորքերի ջախջախմանը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՔՈՏ ԷՐԻՈՒԿԵՆԱ (Johannes Scotus Eriugena), **Էրիգենա** (մոտ 810–մոտ 877), իռլանդացի փիլ.: Լատ. է թարգմանել «Արեոպագիտիկաները» (ժող. վերագրվում է Դիոնիսիոս Արեոպագացուն): «Բնության տարանջատման մասին» պանթեիստ. միտումներով աշխ–յան մեջ Հ. Ս. Է. առանձնացրել է «արարող և անստեղծ» (Աստված), «արարված և ստեղծող» (աստված. գաղափարներ), «արարված և ոչ ստեղծող» (եզակի իրեր), «չարարված և ոչ ստեղծող» հասկացությունները: Հ. Ս. Է. XIII դ–ում քննադատվել է և համարվել հերետիկոս:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐՋՆՑԻ (1540–ական թթ.–մ. թ. անհտ), տպագրիչ, թարգմանիչ, քհն.: 1570–ական թթ–ին որդու՝ Խաչատուրի հետ մեկնել է Հռոմ: Թարգմանել է Գրիգոր XIII պապի մշակած նոր տոմարի ուղեցույցն ու 1584–ին տպագրել (***Սուլթանշահ Աբգարյան Թոխաթեցու*** հետ) «Տօմար Գրիգորեան» վերնագրով: 1587–ին Վենետիկում հրատարակել է Սաղմոսարան, Մարսելում հայ. է թարգմանել «Պատմութիւն Փարէզի եւ Վենայի» (հրտ.՝ 1966) ասպետ. սիրավեպը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԻՐԱՑՈՒ, XVIII դ–ի 1–ին կեսի նկարիչ: Ստեղծագործել է Երուսաղեմում: Տեղի Սբ Հակոբյանց վանքում պահպանվել է նրա 23 նկար («Անառակ որդու վերադարձը», «Մոգերի երկրպագությունը», «Համբարձում», «Հոգեգալուստ» ևն): Որպես ֆոն օգտագործել է եվրոպ. փորագրություններից վերցրած բնանկարներ, երբեմն նույն կտավի վրա տեղադրել է կրկնակի սյուժեներ («Ղազարոսի հարությունը» և «Քրիստոսի մուտքը Երուսաղեմ» ևն):

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՈՒՍՏԱ, XVII դ–ի շինարար վարպետ: 1644–66–ին նորոգել է Այունիքի Ապրակունիս գ–ին մերձակա Սբ Կարապետ վանքի եկեղեցին, գավիթն ու սրահը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՓԻԼՈՓՈՆ, V–VI դդ–ի հույն փիլ. և աստվածաբան: Գրել է Արիստոտելի երկերի բազմաթիվ մեկնություններ: Սուրբ Երրորդության մասին ուսմունքում հարել է «եռաթեիզմին», իր ստեղծագործություններում աշխարհի արարումը մեկնաբանել է Աստվածաշնչի ոգով:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՐՄԱՏԱՆԵՑ (1589/90–1624), տպագրիչ, քհն.: 1615–ին Լվովում հիմնադրել է հայկ. տպարան, 1616–ին տպագրել է Սաղմոսարան, «Բժշկարան» (չի պահպանվել), 1618–ին՝ դփչաղ. Աղոթագիրք:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔՈՒՆԵՑԻ (մոտ 1290/92–1347), ունիթորության տեսաբան, թարգմանիչ, քերական: 1330–ին կաթոլիկ եկեղեցին Հ. Ք–ուն նշանակել է Երնջակի դոմինիկյանների առաջնորդ. եղել է հայ քարոզիչների տեսաբանն ու ղեկ–ը: Լատից հայ. է թարգմանել ծիս. և իմաստասիր. երկեր (Թովմա Աքվինացու «Աստվածաբանութեան հանրագումարի»–ի առանձին բաժիններ ևն): Պահպանվել է «Առ միաբանեալ եղբայրքս հայոց» շրջաբերական թուղթը: «Ցաղագս քերականին» (հրտ.՝ 1977) աշխ–ը նորություն է հայ քերականագիտ. գրկ–յան մեջ: Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արուեստ»–ի իր մեկնության մեջ տվել է հայ–ի ամբողջ. նկարագիրը:

ՀՈՎՀԱՆՆԵՍԲԵԿՈՎԱ Տատյանա Գավրիլի (ծ. 1941), ուռուցքաբան: Բժշկ. գիտ. դ–ր (2001), պրոֆ. (2002): Աշխ–ները վերաբերում են ՀՀ–ում քաղցկեղի ախտորոշման, բուժման, կանխարգելման նոր մեթոդների մշակմանը:

ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ Եղիա (1886–1949), հրապարակագիր, հայագետ, խմբ.: Իրավագիտ–յան դ–ր: «Գյողեղեայի լրագիր» թերթի հիմնադիր–խմբ.: Գրել է նաև հունգ.: Հեղինակ է «Հայաստանի ժողովուրդը» (1934), «Երկրի հայերը հայրենիքի պաշտպանության մեջ» (1940), «Ընտիր էջեր հայ գրականությունից» (1942, երեքն էլ՝ հունգ.) աշխ–ների:

ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ Միքայել Հովհաննեսի (1910–1994), պատմաբան–բանասեր, աշխարհագետ: Լույս է ընծայել «Հայաստանի բերդերը» (1970) ուսումնասիրությունը, «Գարնան հովեր» (1962) բանաստեղծությունների ժող–ը:

ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ Վահան (Թովմաս) Պողոսի (1894–1977), գրող, մանկավարժ, խմբ., վրդ.: ՎնտՄՄ (1913–ից), Վենետիկի ակադ–ի (1965) անդամ: 1929–30–ին՝ *«Բազմավէպ»*–ի խմբ.: 1947–ին՝ *«Միխթարեան ընտանիք»* պարբ–ի հիմնադիր: Հեղինակ է «Հայրենի կրակարան» (1930), «Մարեմական» (1954), «Հայրենի հող» (1962), «Հոգիներու հանգրուանը» (1970) բանաստեղծությունների, «Անհէն քար մը բեր» (1957), «Արգինայի զանգակները» (1957), «Լեռներու երգը» (1971) պատմվածքների ժող–ների, «Տաւրոսի առիւծը» (1959), «Դէպի Աւարայր» (1962) պիեսների:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արգար Հարությունի (1849–1904), հրապարակախոս, թարգմանիչ, խմբ–հրտ.: Փիլ. գիտ. դ–ր: 1876–81–ին՝ *«Փորձ»* հանդեսի, 1882–98–ին՝ *«Արձագանք»* պարբերաթերթի հրտ–խմբ.: 1880–89–ին՝ Թիֆլիսի հայ. գրքերի հրտ–յան ընկ–յան հիմնադիր–նախագահը: 1886–ին Ա. *Լայպփի* հետ հիմնադրել է «Հայկական գրադարան» մատենաշարը և գերմ. հրատարակել հայ գրկ–յան ընտիր նմուշներից: Ֆ. *Ֆինկի* հետ հրատարակել է հայկ. 15 ձեռագիր, մասնակցել *«Հանդէս հայագիտութեան»*–ի խմբագրման աշխ–ներին: Ֆրանս–ից և գերմ–ից թարգմանել է պիեսներ, ֆրանս. է թարգմանել Րաֆֆու «Խաս–փուշ» և «Բիբի Շարաբանի» (երկուսն էլ՝ 1902) վիպակները:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արգար Ռուբենի (1908–1991), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1938), պրոֆ. (1938): ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1947): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1940): 1947–53–ին՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ–ի տնօրեն, 1949–60–ին՝ ԳԱ հաս. գիտ. բաժանմունքի ակադ. քարտուղար, 1960–91–ին (ընդմիջումով)՝ փոխնախագահ: Աշխ–ները վերաբերում են XVIII դ–ի 2–րդ կեսի և XIX դ–ի 1–ին տասնամյակների ազգ. ազատագր. շարժումների, Արլ. Հայաստանի ու Այսրկովկասի, հայ–ռուս. հարաբերությունների պատմությանը:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ալեքսանդր (Սաշա) Անդրեասի (1895–1949), դերասան: Ադրբ. ԽՍՀ ժող. արտիստ (1940): 1921–25–ին՝ Բաքվի (նաև 1925–49–ին), Թիֆլիսի, Ալեքսանդրապոլի, Երևանի հայկ. թատրոնների դերասան (Պեպո, Ջիմզիմով՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», Օթար Բեկ՝ Ա. Յուժին–Սումբատովի «Դավաճանություն», Քաղաքագլուխ՝ Ն. Գոգոլի «Ռևիզոր»):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ալլա Հայաստանի (ծ. 1953), ակնաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1996), պրոֆ. (2006): Երևանի Քանաքեռ–Զեյթուն ԲԿ ակնաբուժ. կլինիկայի ղեկ. (1984–2013): Աշխ–ները վերաբերում են ներակնային անոթների ռեակտիվության որոշման, հակագլաուկոմային վիրահատությունների արդյունքների կանխատեսման և դեղորայքային շտկման հարցերին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Աշոտ Ադամի (1929–1997), նկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (1990): Հեղինակ է ցայտուն ազգ. նկարագրով գործերի («Ավլող կինը», 1969, «Մայրություն», 1970–75, «Դեպի հայրենիք», 1978, «Սեր», 1979–84, ևն), ծիս. բնույթի հոգեբ. թեմատիկ պատկերների («Գաղտնի խորհուրդ», 1977, ևն), դիմանկարների («Մինաս», 1984, «Արշիլ Գորկի», 1985, ևն):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Աշոտ Գարեգինի (1887–1972), պատմաբան, կուս., պետ. գործիչ: ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1960): ՌՍԴԲԿ անդամ՝ 1906–ից: 1918–19–ին՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆ., միաժամանակ՝ Հայկ. գործերի կոմիսարիատի հրտչ. բաժնի վարիչ: 1920–ին Բ. *Լևգրանի* առաքելության կազմում մասնակցել է ՀՀ Կառ–յան հետ բանակցություններին: Եղել է ՀԽՍՀ 1–ին լուսժողկոմը: 1921–27–ին՝ ՀԿԿ ԿԿ 1–ին քարտուղար: 1937–ին անհիմն բռնադատվել է, 1943–ին բանտից ազատվել է, արդարացվել է 1954–ին: Նույն թվականից աշխատել է ԳԱ պատմության ինստ–ում: Հիմն. աշխ–ները վերաբերում են հայ ազատագր. մտքի, հայ–ռուս. հարաբերությունների պատմությանը: «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմ. բազմահատորյակի գլխ. խմբ. և հեղինակներից (հ. 4–6):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Աշոտ Հովհաննեսի (ծ. 1957), անասնաբույծ: Գաղտ. գիտ. դ–ր (1999), պրոֆ. (2000): «Հայանասնահամալիր» հանրապետ. միավորման գլխ. տնօրեն (1994–96): Առաջարկել է կովերի («Հովհաննիայանի ցուցիչ») ըստ մթերատվության, կաթնատվության, կաթի մեջ յուղի և սպիտակուցի պարունակության ու զանգվածի ընտրության հատուկ բանաձև:

ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ Աշոտ Նիկոլայի (ծ. 1960), սրտաբան–առիթմոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (2006), պրոֆ. (2011): Նիկոլայ Մ. *Հովհաննիայանի* որդին: 2012–ից Երևանի Սրտաբանության ԳՀԻ–ի ինտերվենցիոն սրտաբանության, կլինիկ. էլեկտրոֆիզիոլոգիայի և ճառագայթ. ախտորոշման բաժանմունքի հիմնադիր–վարիչ: Աշխ–ները վերաբերում են սրտաբանության, առիթմոլոգիայի, ներքին հիվանդությունների, ճառագայթ. բժշկության հարցերին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Աշոտ Սողոմոնի (1916–1994), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դ–ր (1965), պրոֆ. (1972): Աշխ–ները վերաբերում են նյութափոխանակության ախտաբանությանը, երիկամների կենսաքիմիային, ստամոքսաղիք., երիկամների և միզուղիների, նաև ճառագայթ. հիվանդությունների բուժման խնդիրներին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Առնոս Արշակի (ծ. 1940), քիմիկոս–օրգանիկ: Քիմ. գիտ. դ–ր (1990), պրոֆ. (2010): Աշխ–ները վերաբերում են պոլիմերների և բյուրեղների քիմիային: Տեղեկատվության միջազգ. ակադ–ի անդամ (1997):

Ամերիկ. կենսագր. ինստ–ի «Տարվա մարդ» (1998):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Աբրբակ Խաչիկի (ծ. 1948), ճարտարագետ–շինարար, կոնստրուկտոր: Հ–ի նախագծերով կառուցվել են Երևանի մետրոպոլիտենի «Հանրապետության հրապարակ» կայարանը (1981, ՀԽՍՀ Պետ. մրց., 1983), ՀՀ պետստանդարտի (1978), ԳԱ Հաշվիչ կենտրոնի (1978) շենքերը, «Ավիատրանս» հյուրանոցի 2–րդ մասնաշենքը (2000) ևն:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արբի (ծ. 1942), ռեժ.: Թեհրանում հիմնադրել է «Արմեն» (1960), «Բարգահեե Նեմայեշ» (1969, ռեժ.՝ մինչև 1976–ը) թատրոնները, 1977–ից՝ «Չարսու» թատրոնի ռեժ.: Համագործակցել է Պ. Բրուքի հետ (1970–71): 1979–ից Փարիզում բեմադրել է Ա. Ադամովի, Լ. Շանթի, Ա. Պ. Չեխովի և ուր. գործերից (հիմնականում՝ պարսկ., անգլ.): Ֆիլմերից են՝ «Աղբյուր» (ըստ Մ. Արմենի «Հեղնար աղբյուր» վիպակի, 1971), «Վաբոսն որ անվանվեցավ Թադեոս» (1966, վավերագր.) ևն: Իրանի հեռուստամրց. (1968):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արեգ Սպարտակի (ծ. 1954), կենսաֆիզիկոս: Կենսբ. գիտ. դ–ր (2007), պրոֆ. (2013): 2009–ից՝ ՀՀ Ազգ. հակադոպինգային կազմ–յան ղեկ., 2015–ից՝ Արլ. Եվրոպայի հակադոպինգ. կազմ–յան նախագահ: Աշխ–ները վերաբերում են դեղակինետիկային, բույսերի դեղաբանությանը, հակադոպինգ. ոլորտի խնդիրներին: ՀԱՕԿ «Վարազդատ Արշակունի» շքանշան (2016):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արթուր Հովհաննեսի (ծ. 1949), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1992), պրոֆ. (1993): Աշխ–ները վերաբերում են մասնակի ածանցյալներով հիպերբոլ. տիպի հավասարումներին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արիստակես (1812–1878), երաժիշտ, ձայնագրագետ: Լրացրել է նոր հայկ. ձայնագրության համակարգը (տևողության նշաններ, սահմանել է անուններ, արագության չափեր), հրատարակել է եվրոպ. նոտագրությամբ հայ 1–ին երաժշտ. «Քնար արևելյան» հանդեսը (1857, Գաբրիել *Երանյանի* հետ): Հեղինակ է հոգևոր երգերի, երգախառն թատերգության, գրառել է *շարականներ*:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արմեն Արշավիրի (1936–2011), հրապարակախոս, թարգմանիչ, խմբ.: Թարգմանել է ռուս դասականների գործերից: Հեղինակ է «Աղետ» (1990) ակնարկների, «Հայաստան, երկիր դրախտավայր» (1993), «Խորհրդածություններ երկրորդ էջի համար» (1993), «Մոռացված արժեքների ստվերները» («Արցախյան գոյամարտը երեկ և այսօր. 1988–1998», 1998), «Ուրբաթախոսություն» (2001), «Զանգակատուն բերող ճանապարհին» (հ. 1–3, 2008–12) հրապարակախոս. հոդվածների ժող–ների:

ՀԺՄ «Ոսկե գրիչ» (1989), ՀԳՄ և Մայր աթոռ Սբ Էջմիածնի «Կանթեղ» (2001) մրցանք, ԼՂՀ «Մխիթար Գոշ» (2006) մեդալ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արմեն Հենրիկի (ծ. 1961), ընդերքաօգտագործման բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (2009), պրոֆ. (2015): Աշխ–ները վերաբերում են մետաղ. հանքավայրերի ստորգետնյա մշակման համակարգերի ընտրության, կատարելագործման և նորերի ստեղծման հարցերին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արմեն Մարտիկի (ծ. 1970), մետալուրգիայի և նյութագիտ–յան բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (2011), պրոֆ. (2015): Աշխ–ները վերաբերում են գունավոր մետաղների խտանյու–

թերից արժեքավոր մետաղների կորզման տեխնոլոգիաներին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արմենակ Արսենի (1913–2002), գվարդիայի սերժանտ, Փառքի 3 աստիճանի շքանշանակիր (1944, 1945, 1945): Աչքի է ընկել Ռևստոր, Վիսլա գետերի արմ. ափերին հենակետեր նվաճելու և Բեռլինի գրավման ժամանակ մարտերում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արտակ Կառլենի (ծ. 1955), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1999), պրոֆ. (2011): Աշխ–ները վերաբերում են կրծքավանդակի օրգանների և միջնորմի հիվանդությունների, հետվիրահատ. թարախ. բարդությունների, պառկելախոցերի պլաստիկ վերականգնող. վիրաբուժ. եղանակներով բուժման հարցերին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արտաշես Կոնստանտինի (1939–2014), ռեժ.: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2005): 1966–71–ին՝ Իջևանի ժող. թատրոնի գեղ. ղեկ., 1987–ից՝ Երևանի «Նորք» երիտասարդ. թատրոնի հիմնադիր, գեղ. ղեկ. (Պ. Շաֆֆերի «Մթին պատմություն», Ժ. Անույի «Տորեադորների վալսը», Մուշեղ Իշխանի «Կիլիկիո արքան», «Մեծ աշխարհի մեր անկյունը»՝ ըստ Հ. Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակի, ևն): ՀԽՍՀ Պետ. մրց. (1983), Հանրապետ. (Երևան), համամիութ. (Մոսկվա) թատեր. փառատոների ոսկե մեդալներ (1967):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արտեմ Հովհաննեսի (1824–1888), բժիշկ: Բժշկագիտ. դ–ր (1857): Աշխ–ները վերաբերում են էպիլեպսիայի հիմնահարցերին, նորածինների առողջության պահպանմանը, տարբեր հիվանդությունների ախտանշաններին: Աշակել է հիվանդությունների կանխարգելման միջոցառումներ: Հեղինակ է «Բորժոմի և նրա հանքային աղբյուրների մասին» (ռուս., 1878) մենագրության:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արփինե Աշոտի (ծ. 1983), իրավաբան, պետ., քաղ. գործիչ: Իրավաբ. գիտ. թեկնածու (2010): 2015–17–ին՝ ՀՀ արդարադատության նախարար, 2017–ից՝ ՀՀ ԱԺ փոխնախագահ: Հեղինակ է «Ընտրական օրենսդրության արդի հիմնահարցերը և զարգացման հեռանկարները ՀՀ–ում» (համահեղ., 2013), «Անշարժ գույքի իրավական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ–ում» (2015) և այլ աշխ–ների: ՀՀ «Մխիթար Գոշ» մեդալ (2016):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արֆենյա Գրիգորի (1918–2004), դերասանուհի: Ադրբ. ԽՍՀ վաստ. արտիստ (1982): 1934–ից՝ Ստեփանակերտի դրամատիկ. թատրոնի դերասանուհի (Շպպանիկ՝ Շիրվանզադեի «Նամուս», Խենովևա՝ Ա. Կասնայի «Ծառերը կանգնած են մահանում», Քեթևան՝ Գ. Սունդուկյանի «Խաթաբալա», տիկին Միլլեր՝ Ֆ. Շիլլերի «Սեր և խարդավանք», Արուս տատ՝ «Աշնան արև»՝ ըստ Հ. Մաթևոսյանի, ևն):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Բագրատ Գալուստի (1929–1990), կինոռեժ.: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1988): 1969–ից՝ Հայֆիլմի ռեժ. («Աղքատի պատիվը», 1969, ըստ Հ. Թումանյանի, «Հնձան», 1973, «Աշնան արև», 1977, «Տերը», 1983, ըստ Հ. Մաթևոսյանի, «Ադամամութ», 1988, ըստ Վ. Գրիգորյանի): Ֆիլմերն աչքի են ընկնում ազգ. հարուստ նկարագրով, լուծումների խորությամբ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գագիկ Հովհաննեսի (1947–2015), լրագրող, խմբ., շախմատի մեկնաբան: ՀՀ վաստ. ժուռնալիստ (2012): Հայաստանի շախմատի ֆեդերացիայի գլխ. քարտուղար (1970–ից), Շախմատի համաշխ. ֆեդերացիայի (ՖԻԴԵ) եվրոպ. 5–րդ գոտու նախագահ (1994–2010), ՖԻԴԵ–ի լրագրության և վիճակագրության հանձնաժողովի նախագահ (1995–2002, 2007–09), 1972–2015–ին՝ «*Շախմատային Հայաստան*» հանդեսի հիմնադիր–խմբ.: Հեղինակ է շախմատի վերաբերյալ շուրջ 50 գրքերի:

Երևանի մամուլի ակումբի «Հավատարմություն թեմային» (2005) մրց., ԵՊՀ (2010), ՀԺՄ «Հավատարիմ մասնագիտությանը» (2012) ոսկե մեդալներ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գալինա Գեորգիի (ծ. 1960), գենետիկ: Կենսբ. գիտ. դ–ր (2013): Աշխ–ները վերաբերում են էկոլոգ. և թունաբան. գենետիկայի, մոլ. բջջագենետիկայի, մուտագենեզի, հակամուտագենեզի հարցերին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (Մատակյան) Գայանե Հարությունի (1852–1900), մանկավարժ: 1882–ին Թիֆլիսում հիմնադրել է Ֆրյորելյան ընկ–ը, ղեկավարել 1–ին մանկապարտեզը՝ Զրկինենց եկեղեցուն կից: 1883–ին Երևանում բացել է 1–ին մանկապարտեզը, 1887–ին Կ. Պոլսի հայկ. թաղամասերում կազմակերպել է կիրակնօրյա դասընթացներ, որոնց հիման վրա հետագայում ստեղծվել է աղջիկների կիրակնօրյա վարժարան:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գայանե Ռազմիկի (ծ. 1965), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ–ր (2000), պրոֆ. (2005): Աշխ–ները վերաբերում են կիրառ., ճանաչող. լեզվար. խնդիրներին, լեզվ. մտածողությանը և լեզվագիտ–յան հոգեվերլուծությանը: Հեղինակ է «Ժամանակի հոգելեզվաբանական հայեցակարգը» (2001) մենագրության, «Հոգելեզվաբանության ներածություն» (2003), «Հոգելեզվաբանություն» (2011) բուհ. ձեռնարկի:

ՀՊՄՀ Խ. Աբովյանի անվ. մեդալ (2004):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գառնիկ Զանիբեկի (1957–1995), սամբիստ: ԽՍՀՄ ս. վ. (1971): Աշխարհի չեմպիոն (1981): ՀՀ սամբոյի ֆեդերացիան անցկացնում է Հ–ի անվ. մրցաշար:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գարրի Մկրտչի (1927–1998), գրականագետ, խմբ., հրտ.: Բանասիր. գիտ. դ–ր (1970): 1954–ից՝ ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների» հանդեսի պատ. քարտուղար, ապա՝ խմբ–ի տեղակալ, 1959–ից՝ ԳԱ խմբագրահրտչ. խորհրդի գլխ. խմբ.: Հեղինակ է «Նար–Դոս» (1959), «Ավետիք Իսահակյան արձակը» (1963), «Իսահակյանի ստեղծագործական աշխարհը» (1969), «Ավետիք Իսահակյան: Կյանքն ու ստեղծագործական ուղին» (1975), համահեղ.՝ «Հայ նոր գրականության պատմություն» բազմահատորյակի (հ. 4, 5, 1972, 1979), «Ազատասիրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ (1820–1920 թթ.)» (1982) աշխ–ների:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գուրգեն Անդրանիկի (ծ. 1953), նյարդաբան: Բժշկ. գիտ. դ–ր (2000), պրոֆ. (2002): Աշխ–ները վերաբերում են գլխուղեղի անոթ., ծայրամասային նյարդ. համակարգի, նյարդամկան. հիվանդություններին, արյան միկրոշրջանառության խանգարումներին:

ՀՀ նյարդաբանների ընկերակցության նախագահ (2008–ից):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Դավիթ Բարսեղի (1927–2007), երգիչ (բարիտոն): Ռումինիայի վաստ. արտիստ (1952): 1950–77–ին՝ Կլուժ–Նապոկայի, Բուխարեստի, Համբուրգի օպեր. թատրոնների մենակատար (Տոնիո՝ Ռ. Լեոնկավալլոյի «Պայացներ», Մեֆիստոֆել՝ Շ. Գունոյի «Ֆաուստ», Ամոնասրո՝ Ջ. Վերդիի «Այիդա», Մոսի՝ Ա. Տիգրանյանի «Անուշ», համերգ. կատարում՝ Բուխարեստի «Կոմիտաս» երգչախմբի հետ, ևն):

Ռումինիայի Պետ. (1952), Մեծ (1974, Փարիզ) և 1–ին (1976, Տոկիո) մրց–ներ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Դավիթ Լևոնի (ծ. 1960), ռադիոտեխնիկայի բնագավառի գիտնական: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (2003), «Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ–ի ճարտարագետ–նախագծող (2005–ից): «Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ–ի ճարտարագետ–նախագծող (2005–ից): Հայտնաբերել է լազեր. գերկարճ իմպուլսների ժամանակ. պրոֆիլի գրանցման նոր եղանակ, ուսումնասիրել ֆեմտովայրկյան. և լազեր. հարաչափերի կառավարումն օպտիկ. գծային և ոչ գծային տարրերի միջոցով:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Դեյզի Նիկոլայի (ծ. 1951), քիմիկոս: Տեխ. գիտ. դ–ր (2001), պրոֆ. (2003): Աշխ–ները վերաբերում են վինիլբենզոյական թթուների, բիս–ածանցյալների սինթեզին և դրանց կիրառությանը (որպես պնդացուցիչներ) էպօքսիդային խեժերի ստացման համար: Աշակել է նոր օրգ. կապակցություններ և դրանց հիման վրա՝ նոր շին. բաղադրանյութեր:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Էդգար Սերգեյի (1930–1998), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1962), ՀՀ (1972), ԽՍՀՄ (1986) ժող. արտիստ: 1970–74–ին՝ Հայկ. ժող. երգի–պարի անսամբլի, 1979–84–ին՝ ՀՀ հեռուստառադիոյի կամեր. երգչախմբի գեղ. ղեկ.: Հեղինակ է բալետների («Մարմար», 1957, «Երկնագույն նոկտյուռն», 1964, «Հավերժական կուռք», 1966, «Անտունի», 1969, «Դիմակահանդես» բալետ. կոմպոզիցիա՝ ըստ Ա. Խաչատրյանի երաժշտության, 1982), «Սասունցի Դավիթ» օպերա–բալետի (1976), «Ճանապարհորդություն դեպի Արզրում» (ըստ Ա. Ս. Պուշկինի, 1987) օպերայի, սիմֆոնիաների, «Գողգոթա» (1993) սիմֆ. պոեմի, կվարտետների, սոնատների, օրատորիայի, խմբերգերի, երգերի («Էրեբունի–Երևան» ևն), թատրոնի և կինոյի երաժշտության:

Երիտասարդության և ուսանողների համաշխ. փառատոնի (1957, Մոսկվա), ՀՀ (1967), ԽՍՀՄ (1979), Ա. Խաչատրյանի անվ. (1984) Պետ. մրց–ներ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Էդուարդ Տոնիկի (ծ. 1942), դեղագործ: Դեղաբանադեղագործ. գիտ. դ–ր (1982), պրոֆ. (1982), ՌԴ բարձրագույն դպրոցի վաստ. աշխատող (2004): Աշխ–ները վերաբերում են դեղաբան. և բժշկ. քիմիայի հարցերին: Զբաղվում է բուս. ծագման կենսաբանորեն ակտիվ միացությունների և դրանց սինթետիկ նմանակների նուրբ օրգ. սինթեզի ուսումնասիրություններով: ՌԲՆԳԱ թղթ. անդամ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Թամար Ստեփանի (ծ. 1948), երաժշտագետ, դաշնակահարուհի: Արվեստագիտ. թեկնածու (1987): 1976–80–ին՝ Հայհամերգի մենակատար: Հեղինակ է «Հարություն Դելլալյան» (1993), «Էջեր կոմպոզիտորի կյանքից» (1999), «Վիկտոր Խաչատրյանի արվեստը» (2004) և այլ աշխ–ների:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (Իոաննեսյան) Թամարա Տիգրանի (1904–1988), կենսաբան:

Կենսբ. գիտ. դ-ր: Լևոն *Տ. Հովհաննիսյանի* քույրը: Աշխ-ները վերաբերում են թթենու շերամորդի պոլիէտրոզին:

ԽՍՀՄ ԺՏՆՑ ոսկե և արծաթե մեդալներ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Թունիկ (Հարություն) Սարգսի (1908–1941), կոմպոզիտոր: Հեղինակ է սիմֆոնիայի, լար. կվարտետի, «Դաշնամուրային վարիացիաներ»-ի, գործիք. պիեսների, երգերի, ռոմանսների ևն:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Լաուրա Սարիբեկի (1924–2010), սրտաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1972), պրոֆ. (1972): Առաջարկել է սրտի փականների վնասվածքների ժամանակ ներսրտային հեմոդինամիկայի փոփոխման գնահատման թեստ:

Աշխարհի կին մտավորականների «Ռևկե ռեկորդ» մրց. (1987):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Լավրենտի Շահենի (ծ. 1944), լեզվաբան, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1995), պրոֆ. (2008): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2010): 2006–09-ին՝ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստ-ի տնօրեն: Հեղինակ է «Հայոց լեզվի պատմության հարցեր» (1985), «Հայերենի իրանական փոխառությունները» (1990), «Նյութեր պատմական բառարանագրության» (2001), «Հայ-իրանական նոր ստուգաբանություններ» (2005), «Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն» (մաս 1, 2, 2008, 2012), «Գրաբարի բառարանագրության և բառագիտության հարցեր» (2009), «Հատուկ անունների մեկնությունները Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ» (2013), «Բառերի մեկնությունները հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ» (2016) և այլ աշխ-ների:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Լյուսյա Իվանի (1926–1993), դերասանուհի: ՀՀ ժող. արտիստ (1978): 1946-ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասանուհի: Ճանաչվել է բնութագր. դերերով (Շամիրամ՝ Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ», Էմիլիա, Վոլումնիա՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», «Կորիոլան», Մայր՝ Ա. Աղասարյանի «Փրկեցեք մեր հոգիները», ևն): Նկարահանվել է կինոյում («Հուսո աստղ», 1978, «Խոշոր շահում», 1980, ևն), խաղացել ռադիո- և հեռուստաներկայացումներում: ԽՍՀՄ Պետ. մրց. (1981):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Լևոն Անդրեասի (1885–1970), սրտաբան, բժիշկ-պատմաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1937), պրոֆ. (1937): ՀԽՍՀ ԳԱ (1943) և ԽՍՀՄ ԲԳԱ (1944) ակադ.: ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1940): Կոստանդին *Հովհաննիսյանի* հայրը: Հ-ի նախաձեռնությամբ 1961-ին Երևանում հիմնադրվել է Սրտաբանության և սրտային վիրաբուժության ԳՀԻ (1971-ից՝ Լ. Հովհաննիսյանի անվ.): Աշխ-ները վերաբերում են սրտաբանության, կուրորտաբանության, մալարիայի և վարակիչ հիվանդությունների, բժշկագիտ-յան պատմության և այլ հարցերի: Առանձնահատուկ արժեք ունի «Բժշկության պատմությունը Հայաստանում...» (ռուս., մաս 1–5, 1946–47) աշխ-ը: Ռուս. է թարգմանել և հրատարակել Մխիթար Հերացու «Ձերմանց մխիթարությունը», կազմել է «Լատին–ռուս–հայերեն բժշկական բառարանը» (1951, համահեղ.): Հեղինակ է «Ներքին հիվանդությունների մասնավոր ախտաբանությունը» (1956) և «Ներքին հիվանդությունների պրոպեդևտիկա» (1964) դասագրքերի:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Լևոն Գասպարի (1924–1988), ճարտ.: ՀԽՍՀ վաստ. ճարտ.: Համահեղինակ է Հրազդանում՝ էներգետիկների ակումբի (1983), Դիլիջանում՝ Բեթհովենի անվ. համերգասրահի (1977), Աղվերանում՝ ՀՀ ԳԱԱ գիտաժողովների տան, Հանքավանում, Դիլիջանում, Գավառում (1950-ական թթ.)՝ հանք. ջրերի շշալցման գործարանների և այլ շինքերի նախագծերի:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Լևոն Վահանի (ծ. 1937), երկրաբան: Երկրբ-հնքբ. գիտ. դ-ր (1991), պրոֆ. (1997): ՌԴ վաստ. երկրաբան (1998): Հենրիկ Վ. *Հովհաննիսյանի* եղբայրը: Աշխ-ները վերաբերում են հանքագոյացման, հանքավայրերի կանխատեսման և օգտ. հանածոների որոնման հարցերին: Հանք. պաշարների միջազգ. (1994), ՌԴ բնական (1997) և լեռն. (2000) ԳԱ-ների անդամ: Ռուսաստանի երկրբ. ընկ-յան փոխնախագահ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (Իոանեսյան) Լևոն Տիգրանի (1908–1999), արտադր-յան կազմակերպիչ, գյուտարար: ՀԽՍՀ վաստ. ճարտարագետ (1962): Թամարա *Հովհաննիսյանի* եղբայրը: 1944–45-ին՝ Լենինականի մեխ., 1945–50-ին՝ Երևանի էլեկտրատեխ. գործարանների տնօրեն, 1950–72-ին՝ Հայէլեկտրագործարանի գլխ. ճարտարագետ-մեխանիկոս: Մշակել է մեխ. համաուղղիչով եռաֆազ սինքրոտրոն՝ նոր տիպի գեներատոր և իրականացրել դրա արտադր-յունը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Խորեն Ժորայի (ծ. 1955), ֆուտբոլիստ, մարզիչ: ԽՍՀՄ (1975), միջազգ. կարգի (1976) ս. վ.: Գ. Ի. *Ֆեդոտովի* անվ. ակումբի անդամ (113 գոլ): ԽՍՀՄ հավաքականի կազմում մասնակցել է 37 խաղի, խփել 8 գնդակ: Եվրոպայի երիտասարդ. առաջնության հաղթող (1976), ԽՍՀՄ արծաթե (1976), օլիմպ. խաղերի բրոնզե (1980) մեդալակիր, աշխարհի առաջնության մասնակից (1982): 1992–93-ին՝ Երևանի, 1993–94-ին՝ Բեյրութի ՀՄԸՄ թիմերի խաղացող-մարզիչ, 1995–2001-ին՝ «Ֆյունիկ» թիմի գլխ. մարզիչ, 2002-ից՝ նույն ակումբի նախագահ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Կարեն Հրանտի (ծ. 1938), ճարտարագետ-մեխանիկոս: Տեխ. գիտ. դ-ր (1984), պրոֆ. (2001): Աշխ-ները վերաբերում են լեռն. երկրագործության մեքենայացման, մեքենաների շահագործման և կենսագործունեության անվտանգության խնդիրներին: Ստեղծել և կատարելագործել է կարտոֆիլի տնկման ու մշակման մեքենաներ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Կոստանդին Լևոնի (1911–1984), ճարտ.: Ճարտ-յան դ-ր (1967): ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1961): Լևոն Ա. *Հովհաննիսյանի* որդին: 1950–72-ին պեղել և հետազոտել է Էրեբունի ք-ի մնացորդները: Հեղինակ է «Էրեբունի» (1968), «Էրեբունիի որմնանկարները» (1973), «Ճարտարապետական հուշարձանների վերանորոգումը Սովետական Հայաստանում» (1978), «Տրդատ ճարտարապետ» (1951), «Թեյշեբաինիի ճարտարապետությունը» (1955), «Էրեբունիի ճարտարապետությունը» (1961), «Էրեբունի ամրոցը» (1980, վերջին չորսը՝ ռուս.) և այլ աշխ-ների:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հակոբ Գարեգինի (1875–1941), քիմիկոս: Քիմ. գիտ. դ-ր (1903), պրոֆ. (1925): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1935): Աշխ-ները վերաբերում են C վիտամինի կառուցվածքի ուսումնասիրությանը: Անհիմն բռնադատվել է, հետագայում՝ արդարացվել:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հակոբ Միսաքի (1888–1947), երաժշտագետ, հաս. գործիչ: Թիֆլիսի Հայարտան երաժշտ. մասնաճյուղի հիմնադիրներից: Աշակերտել է Մակար Եկմալյանին, Գրիգոր Սյունիին: 1907–35-ին՝ Բաթումի, Թիֆլիսի հայկ. դպրոցների ուսուցիչ: Հեղինակ է «Հայ երաժշտության պատմություն», «Հայ ժողովրդական երգի մասին» (անտիպ) աշխ-ների:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հայկազ Ժորայի (ծ. 1958), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1999): Աշխ-ները վերաբերում են հայ-ռուս. հարաբերություններին: Հայոց պատմության դասավանդողների ընկերակցության նախագահ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հասմիկ Հովհաննեսի (ծ. 1966), փիլ.: Փիլ. գիտ. դ-ր (2014): Հեղինակ է «Համառոտ ակնարկ փաստարկման երևանյան դպրոցի ձևավորման և զարգացման մասին» (1997), «Փաստարկման հարցերը հայ փիլիսոփայական մտքի պատմության համատեքստում» (գիրք 1, 2, 2005, 2009) և այլ աշխ-ների:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հասմիկ Սերգեյի (ծ. 1952), համաճարակաբան: Բժշկ. գիտ. դ-ր (2006), պրոֆ. (2017): Աշխ-ները վերաբերում են մակաբուծաբանության, վիրուսաբանության, իմունականխարգելման հարցերին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հարություն Սեդրակի (1922–1998), նկարիչ: Հեղինակ է «Հայկական ճարտարապետական հուշարձաններ» գրաֆիկ. շարքի («Գեղարդ», 1975, «Կեչառիս», 1980, «Սաղմոսավանք», 1989, «Հաղարծին», 1990, «Կարմրավոր», 1991, ևն), «Զանգեզուր» և «Երգ Սևանի մասին» նկարաշարերի («Մնձրևից առաջ», «Լերկ լեռներ», երկուսն էլ՝ 1976, «Տաթև», 1981, «Սևանի կղզում», 1990, «Լեռների գրկում», 1997, ևն, բոլորը՝ օֆորտ):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հեղինե (Տեր-Հովհաննիսյան Ելենա) Սերգեյի (1928–2014), դերասանուհի: ՀՀ ժող. արտիստ (1983): Պրոֆ. (1982): Մարաթ *Մարինոսյանի* կինը: 1948-ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասանուհի (Գոներիլ՝ Վ. Շեքսպիրի «Լիր արքա», Գլաֆիրա՝ Մ. Գորկու «Եգոր Բուլըչովը և ուրիշները», Լիզա՝ Լ. Ն. Տոլստոյի «Կենդանի դիակ», ևն): Նկարահանվել է կինոյում («Սայաթ-Նովա», 1960, հեռուստաֆիլմ, «Տղամարդիկ», 1972, «Հուսո աստղ», 1978, երկուսն էլ՝ Հայֆիլմ), խաղացել ռադիո- և հեռուստաներկայացումներում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հենրիկ Բարդուղի (1918–1964), կինոռեժ.: 1955-ից՝ Սոսֆիլմի ռեժ.: Սասնակցել է Ս. Ա. *Գևորգյանովի* մի շարք ֆիլմերի («Խաղաղ Դոն», 1957–58, ևն) ստեղծմանը: Նկարահանել է «Աղջկական գարուն» (1960, Վ. Դորմանի հետ), «Կրոշի արկածները» (1962, ըստ Ս. Ռիբակովի), «Երեքին գումարած երկու» (1963, ըստ Ս. Վ. Միխալկովի): Հեղինակ է կինոսցենարների («Տիկնայք», 1955, Լև *Կուլիջանովի* հետ) ևն:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հենրիկ Վահանի (ծ. 1936), թատերագետ: ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2003): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006), պրոֆ. (1988): Լևոն Վ. *Հովհաննիսյանի* եղբայրը: Հեռուստառադիոպետկոմի նախագահ (1990–91): Հեղինակ է «Բեմական խոսքի պոետիկան» (1973), «Թատրոնը միջնադարյան Հայաստանում» (1978), «Հայ հին դրաման և նրա պայմանաձևերը» (1990), «Հայ թատրոնի պատմություն, XIX դ.» (1996), «Միջնադարյան բեմ»

(2004), «Հնագույն դրաման Հայաստանում: Ծագման հարցի շուրջը» (2010), «Ստանիսլավսկու «սիստեմը» և խաղի պարադոքսը» (2012), «Սուրեն Քոչարյանի գրական բեմը» (2016) ևն:

ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի (2011), ՄՆ ոսկե (2008) մեդալներ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հովհաննես (1865–1936), վիրաբույժ, հաս. գործիչ: Աշխ-ները վերաբերում են վիրաբուժության հարցերին: Երևանում բացել է սեփ. վիրաբուժ. հիվանդանոց (գործել է 1911–23-ին): Եղել է Կովկաս. հայկ. բարեգործ. ընկ-յան Երևանի բաժանմունքի նախագահ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հովհաննես Գաբրիելի (1928–1995), քանդ.: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1985): Հեղինակ է հաստոց. և մոնումենտալ քանդակների՝ Վարդենիս բ-ի մուտքը (1968), ՀՄՊ-ում (1941–45) զոհված մարտիկներին նվիրված հուշարձանը (1968, Գավառ, երկուսն էլ՝ Ռաֆայել *Իսրայելյան*ի հետ, ճարտ.՝ Ռաֆայել *Իսրայելյան*) ևն:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հովհաննես Մկրտչի (1864–1929), բանաստեղծ: Արևելահայ բանաստեղծ. նոր դպրոցի հիմնադիրը: Հեղինակ է հայրենասիր. («Տեսե՞լ ես արդեօք այն բլուրները», 1880, «Երկու ճանապարհ», 1883, «Մնաք բարով, արեւ, գարուն», 1887, «Սարն ի վեր», 1896, ևն), գյուղի կյանքը նկարագրող («Գիւղի ժամը», 1886, «Հատիկ», 1886) բանաստեղծությունների, «Սիւնյաց իշխանը» (1887) պատմահոգեբ. պոեմի և այլ գործերի: Թարգմանել է Հոմերոսի, Յ. Վ. Գյոթեի, Ֆ. Շիլլերի, Հ. Հայնեի, Վ. Հյուգոյի, Ա. Ս. Պուշկինի, Մ. Յ. Լերմոնտովի, Շ. Պետեֆիի, Լ. Ուլանդի և ուր. գործերից:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հովհաննես Վարդանի (1933–2010), մնասվածքաբան-օրթոպեդ: Բժշկ. գիտ. դ-ր (1972), պրոֆ. (1979): ՌԲԳԱ թղթ. անդամ (2000): ՌԽՖՍՀ վաստ. գյուտարար (1977), ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1987): Առաջարկել է դաստակի վերականգնող. վիրահատություններ և ֆունկցիայի վերականգնման վիրաբուժ. եղանակներ: Վնասված հոդաճաոի ամբողջականության և ֆունկցիայի վերականգնման (ինքնուրույն վերածնմամբ) բուժ. նոր ուղղության հիմնադիրն է: Ս. Վոլկովի հետ ստեղծել է մնասված հոդերի ֆունկցիայի և աճառային հյուսվածքի վերականգնման «Վոլկով-Հովհաննիսյանի հոդակապային ձգող ապարատը»: 1988-ի Սպիտակի երկրաշարժից հետո առավել ծանր մնասվածքներով հիվանդներին տեղափոխել է Մոսկվա և կազմակերպել նրանց բուժումը:

ԽՍՀՄ (1987), ՌԴ (2000) Պետ., Կառյան (2001) մրց-ներ, ՌԳԱ Ն. Ի. Պիրոգովի անվ. (2002), ՀՀ «Մխիթար Հերացի» (2003) մեդալներ, Սերբիայի Նեգուշի 1-ին աստիճանի շքանշան (2004):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հովսեփ (1881–1975), խմբ.: 1909-ին Թավրիզում հրատարակել է «Առաւօտ», 1912-ին Թեհրանում՝ «Արշալոյս» թերթերը: 1942–48 և 1955–58-ին՝ ՀՅԴ «*Ալիք*» օրաթերթի գլխ. խմբ.: Հեղինակ է «Հուշեր» (հ. 1–2, 1995) գրքի:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հովսեփ Հովհաննեսի (Իոաննեսով Իոսիֆ, Յաժդերխանցի, ծ. թ. անհտ–1862), տպագրիչ, թարգմանիչ, եկեղեց. գործիչ: 1811-ին Ս. Պետերբուրգում հիմնադրել է հայկ. տպարան (2-րդը՝ Ռուսաստանում), տպագրել 12 անուն գիրք: Ռուս. է թարգմանել Մովսես Խորենացու «Պատմություն Հայոցը» (1809), Գ. Մելքիսեդեկյան-Խուրովի, Մարզար Խոճենցի (Գեղամյան) աշխ-ներից, թարգմանել և հայ-ռուս. տեքստերով հրատարակել է Գրիգոր Նարեկացու «Մաղթանք գիշերային» (1810) տաղը:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հրաչյա Գարեգինի (ծ. 1944), կենսատեխնոլոգ: Կենսբ. գիտ. դ-ր (2001): Աշխ-ները վերաբերում են ամինաթթուներ և բազմաշաքարներ սինթեզող արտադր. միկրոօրգանիզմների ստացման և նրանց կենսասինթեզի գենետիկ. մեխանիզմների բացահայտման, գերհույզի գենետիկ. կարգավորման հարցերին: Հ-ի ստացած բարձր ակտիվության շատ շտամներ ներդրվել են արտադր-յան մեջ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հրաչյա Կարապետի (1919–1997), գրող, թարգմանիչ, խմբ., հրապարակախոս, հաս. գործիչ: ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1974): Դավիթ *Հովհաննեսի* հայրը: 1988–90-ին՝ ՀԳՄ նախագահ: 1955–59 և 1978–82-ին՝ *«Գրական թերթ»*, 1982–86-ին՝ *«Սովետական գրականություն»* պարբ-ների խմբ.: Հեղինակ է «Հրաշալի այգեպան» (1956), «Սուրբ դափնու վրա» (1970), «Հայրական երգ» (1977), «Իրիկնային ղողանջ» (1982), «Դաժան դրախտավայր» (1993) և այլ բանաստեղծությունների ժող-ների, «Մոտիկն ու հեռուն» (1967), «Ժամանակի շունչը» (1976), «Աշտաղալար ծառ» (1985), «Անկախության պերճանքն ու խեղճությունը» (1994) հրապարակախոս. հոդվածների, «Սիբռնեյ: Իրապատումներ» (2011) էսսեների ժող-ների, «Հուշերի երեկո» (1996) հուշագրության, «Ոսկե ամպ» (1984), «Պատերազմի դեմքը» (1986) և «Կապույտ լեռան շուքը» (1995) եռերգության:

ՀԽՍՀ Պետ. (1979), ՀԳՄ Ա. Խաճակյանի (1982), ԼՂՀ Եղիշեի անվ. Պետ. (1994) մրց-ներ, ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի, Կարմիր աստղի, Ժողդ-ների բարեկամության, «Պատվո նշան» շքանշաններ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Մարատ Համազասպի (ծ. 1945), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (1989), պրոֆ. (2002): Հայկ. բանակի կենտր. կլինիկ. հոսպիտալի հիմնադիրներից է: Աշխ-ները վերաբերում են կերակրափողի սպիական նեղացումների պահպանող. բուժման և ռազմաղաշտ. վիրաբուժության խնդիրներին: ՀՀ ռազմարժշկ. ակադ-ի նախագահ (2000-ից):

ՀՀ «Մխիթար Հերացի» (2000), «Մարշալ Բաղրամյան-100» (2004), «Զորավար Անդրանիկ» (2005) մեդալներ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Մարինե Գևորգի (ծ. 1980), ուռուցքաբան, իմունոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (2016), պրոֆ. (2016): Աշխ-ները վերաբերում են ուռուցք. հիվանդությունների առաջացման սոցիալ-հիգիենիկ հիմնախնդիրներին, աննդակարգի հարցերի:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Մարինե Էդգարի (ծ. 1954), բուսաբան-կարգաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1996): Աշխ-ները վերաբերում են բույսերի կարգաբանության, ձևաբանության, անատոմիայի, աշխարհագրության և այլ հարցերի ուսումնասիրությանը: Մասնակցել է «Հայաստանի ֆլորան» բազմահատոր աշխ-յան (հ. 9–10) պատրաստման աշխ-ներին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Սաքսիմ (Ավանեսյան Միսաք) Երվանդի (ծ. 1934), գրող, խմբ.: Վաստ. լրագրող: 1988–93-ին՝ «Խորհրդային Ղարաբաղ», 1995–98-ին՝ «ԼՂ Հանրապետություն» (1999-ից՝ «Ազատ Արցախ») թերթերի գլխ. խմբ.: Հեղինակ է «Իմ հին լորենի» (1970), «Գյուղացի մարդիկ» (1977), «Եվ սիրտն ասաց» (1980), «Նարնջագույն գիշերներ» (1983), «Շոգ» (1986), «Մենք» (1989), «Գնում ենք արևին դիմավորելու» (1991), «Արցախ իմ, ցավ իմ» (1998), «Հարար, հարար» (2006), «Հոգնած երեկո» (2010), «Չաստվածների խնջույքը» (2008–09) պատմվածքների, վիպակների ու ակնարկների ժող-ների:

ՀԳՄ Դ. Դեմիրճյանի (1990), ԼՂՀ Եղիշեի անվ. Պետ. (2004) մրց-ներ, ԼՂՀ «Մեսրոպ Մաշտոց» շքանշան (2001), ՀԳՄ «Գրական վաստակի համար», ՀՀ ՄՆ «Գրիգոր Նարեկացի» (2014) մեդալներ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Մելքում (Մելքոն) Մովսեսի (ծ. 1949), նկարիչ: Հեղինակ է խորհրդանշ. կտավների («Հավատքի լույսը», 2000, ևն), բնանկարների («Լճափին», 2003, ևն), դիմանկարների («Աղջկա դիմանկար. Մերին», 2003, ևն), քանդակների («Առատություն», 1989, հարթաքանդակ, Մոսկվա, ևն), գոբելենների («Հաղթական պար Բեռլինում», 1985, ևն):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Միքայել Արարատի (ծ. 1938), նկարիչ: Չնավորել է Սարդարապատի ազգագր. թանգարանի նիստերի դահլիճը (1979, Անատոլի *Գրիգորյանի* և Զուլում *Գրիգորյանի* հետ): Հեղինակ է «Հորդորանք» (1972), «Զրոսանք» (1974), «Քնած կինը» (1980), «Ջոհվածների հիշատակին» (1982), «Լուսաբաց» (1986), «Սեդայի դիմանկարը» (1986), «Մենյակում» (1999) և այլ նկարների:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Մուշեղ (1902–1957), դերասան, ռեժ.: Թավրիզում հրատարակել է «Գեղասեր» ամսագիրը (1919), խաղացել Մկրտիչ Թաշճյանի ներկայացումներում: *«Լուսաբեր»* մանկապատանեկան ամսագրի (1949) հրտչ-յուններից, Մշակութ. միության «Ադամյան» թատերախմբի հիմնադիրը: Բեմադրել է Մոլիերի «Ակամա բժիշկը», Թ. Բրանդոնի «Չառլեի մորաքույրը» և այլ պիեսներ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Յուրի Գրիգորի (ծ. 1948), քանդ.: ԼՂՀ վաստ. նկարիչ (2015): 1996-ից՝ Ստեփանակերտի «Գյուրջյան» կիրառ. արվ-ի ինստ-ի ռեկտոր: Հեղինակ է «Ծավալաձև» (1973), «Զրահարս» (1978), «Թավջութակահարուհին» (1985) կոմպոզիցիոն քանդակների, «Ալեքսանդրի դիմաքանդակ»-ի, «Ընծրուստացած Արցախ», «Խաչի վերադարձը հայությանը – Շուշի» (1985), «Մեսրոպ Մաշտոց» (2005) և այլ գործերի:

ԼՂՀ Եղիշեի անվ. Պետ. մրց. (2010):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Յուրի Յոլակի (ծ. 1933), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1970), պրոֆ. (1981): ՌԳԱ ակադ. (1997, ԽՍՀՄ թղթ. անդամ՝ 1990-ից): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (2006): ՌԳԱ միջուկ. հետազոտությունների միացյալ ինստ-ի (ք. Դուբնա) միջուկ. ռեակտորների գիտ. ղեկ.: Հ-ի ղեկավարությամբ կատարվում է գերծանր քիմ. տարրերի սինթեզ, մշակվում են ստացված տարրերի հատկությունների հետազոտման փորձարար. ինքնատիպ կայանքներ: Նոր տարրերի (104–108 ատոմ. կարգահամարով) արհեստ. սինթեզի բնագավառում կատարված 11 հայտնագործությունների համահեղինակ է: Սինթեզել է 112–118 կարգահամարներով տարրերը: Ղեկավարել է ծանր միջուկների արագացուցիչների ստեղծման աշխ-ները և հետազոտել այդ

միջուկների տրոհման ռեակցիաների մեխանիզմն ու շարժընթացները, էկզոտիկ միջուկների հատկությունները: 118-րդ քիմ. տարրը Հ-ի պատվին կոչվել է Օգանեսոն (Oganesson, նշանը՝ Og):

ՀամԼԿԵՄ (1967), ԽՍՀՄ (1975), ՌԴ (2010) Պետ., ԽՍՀՄ ԳԱ Ի. Վ. Կուրչատովի (1989), Միջուկ. հետազոտության միացյալ ինստ-ի (1993), Ա. Հումբոլդի (Գերմանիա, 1995), Եվրոպ. ֆիզ. ընկ-յան Լիզա Մեթների (2000) անվ. և այլ մրց-ներ, ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի, «Պատվո նշան», Ժողղ-ների բարեկամության և ՌԴ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» III (2003) և IV աստիճանի, ՀՀ (2016) և ՌԴ (2009) Պատվո շքանշաններ, ՀՀ ԳԱԱ ոսկե մեդալ (2008):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Նար Միքայելի (1913–1995), երգիչ (բաս): ՀՀ (1954), ԽՍՀՄ (1969) ժող. արտիստ: ***Նար-Դոսի*** որդին: 1931–45-ին (ընդմիջումով)՝ Թբիլիսիի, 1951-ից՝ Երևանի ՕԲԹ-ների մեներգիչ (Դոն Բազիլիո՝ Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», Մեֆիստոֆել՝ Շ. Գունոյի «Ֆաուստ», Դավիթ Բեկ՝ Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ», ևն):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ներսես Գեդեոնի (1938–2016), կինոռեժ.: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1987), ՀՀ ժող. արտիստ (2000): 1958-ից՝ Հայֆիլմի ռեժ., «Բումերանգ» երգիծ. կինոամսագրի գեղ. ղեկ. (1983–89): Նկարահանել է «Ձախորդ Փանոսը» (1970), «Հարսնացու հյուսիսից» (1975) հեռուստատես., «Երջանկության մեխանիկա» (1982), «Օտար խաղեր» (1986) գեղ., «Ռայզման» (1996), «Կալատոզով» (1998), «Պիրև» (1999, երեքն էլ՝ Մոսկվայի վավերագր. ֆիլմերի ստուդիա) վավերագր. և այլ ֆիլմեր: Հեղինակ է կինոսցենարների: Նկարահանվել է «Ապրեցեք երկար» (1979), «Մենավոր ընկուզենի» (1986) և այլ ֆիլմերում: 1999-ից՝ Մոսկվայում:

ՀԽՍՀ Պետ. (1983), «Հայակի» հատուկ (2013) մրց-ներ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Նիկոլայ Ալեքսանի (1899–1945), հրետանու գեն-մայոր: 76-րդ հայկ. լեռնահրաձգ. դիվիզիայի շտաբի պետ, հրամ-ի պաշտոնակատար: Մասնակցել է Խորհրդա-ֆինն. պատերազմին (1939–40): 1941-ին՝ Պոդոլսկի հրետան. ուսումնարանի պետ: ՀՄՊ-ի ժամանակ եղել է գվարդ. տանկ. բանակի հրետանու պետ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Նիկոլայ Հովհաննեսի (ծ. 1930), պատմաբան, արևելագետ: Պատմ. գիտ. դ-ր (1968), պրոֆ. (1972): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2003): 1995–2006-ին՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտ-յան ինստ-ի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են արաբ. երկրների պատմությանը, միջազգ. հարաբերություններին՝ Մերձ. ու Միջին Արևելքում, և հայ-արաբ. հարաբերություններին: Քեմբրիջի միջազգ. կենսագր. կենտրոնի «XXI դ-ի ականավոր գիտնական» (2004), «Աշխարհի առաջատար գիտնական» (2005),

ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշան (2016), ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի (2016), ԼՂՀ «Երախտագիտություն» (2015) մեդալներ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Նիկոլայ Մեսրոպի (ծ. 1934), ճառագայթաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1971), պրոֆ. (1972): 1986–2004-ին՝ ՀՀ ԱՆ ճառագայթ. բժշկության և այրվածքների գիտ. կենտրոնի տնօրեն, 2004-ից՝ փոխտնօրեն: Աշոտ ***Հովհաննեսյանի*** հայրը: Աշխ-ները վերաբերում են բժշկ. ճառագայթաբանության, ռադիոակտիվ իզոտոպների միջոցով սիրտանոթ. հիվանդությունների ախտորոշման հարցերին: ՀՀ ռենտգենաբանների և ճառագայթաբանների բաժանմունքի նախագահ (1986–ից):

ՀՀ ԲԳԱ (1997), ՌԲՏԳԱ (2001) անդամ: ՀԽՍՀ Պետ. մրց. (1988):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Նիկողոս (Նիկոլ) Ալեքսանդրի (1877–1919), դերասան, ռեժ.: Խաղացել է Բաքվի և Թիֆլիսի թատրոններում (Ուրիել Ակոստա՝ Կ. Գուցկովի «Ուրիել Ակոստա», Համլետ՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», Ֆրանց՝ Ֆ. Շիլլերի «Ավազակներ», Ներսեհ՝ Մուրացանի «Ռուզան», ևն): Ալեքսանդրապոլի Հայ դրամատիկ նոր խմբի ղեկ. (1905–06): Հեղինակ է «Լիզա» կատակերգության (1906, բեմ.՝ Ախալցխայում):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Շավարշ Արամի, ***Հովհաննես Շավարշ*** (1908–1980), նկարիչ: ՀԽՍՀ վաստ. նկարիչ (1961): Հեղինակ է գրքի նկարազարդումների (Ս. Լիսիցյանի «Աբու Հասանի մաշիկները», 1950, Հ. Պարոնյանի «Մենապատիվ մուրացկաններ», 1950, Ե. Չարենցի «Խմբապետ Շավարշը», 1956, «Երկիր Նաիրի», 1958, ևն), հաստոց. գրաֆիկ. գործերի, երգիծ. պլակատների:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Պարույր Աբրահամի (1906–1972), անասնաբույժ: Անասնաբուժ. գիտ. դ-ր (1941), պրոֆ. (1941): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1966): Աշխ-ները վերաբերում են գղտ. կենդանիների ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման ու բուժման հարցերին, տավարի մարսողության օրգանների ֆիզիոլոգիային, ախտաբանությանը և բուժմանը:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Պետրոս Հովհաննեսի (1944–2016), պատմաբան, աղբյուրագետ, մատենագետ: Պատմ. գիտ. թեկնածու (1976), պրոֆ. (2012): ՀՀ վաստ. մանկավարժ (2009): Աշխ-ները վերաբերում են պատմագրության, աղբյուրագիտ-յան, հին ու միջնադար. Հայաստանի, Հայկ. հարցի և սփյուռքի արդի պատմության խնդիրներին: Ուսումնասիրել է Նիկողայոս ***Ադոնցի*** աշխ-ները: Կազմել և հրտ-յան է պատրաստել Ն. Ադոնցի «Երկեր» (հ. Ա–Է, 2006–14), Հ. Զորյանի «Պատմագիտական ուսումնասիրություններ» ժող-ները:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ռաֆայել Հովսեփի (ծ. 1940), կենսաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1988): Աշխ-ները վերաբերում են ջրաէկոհամակարգերի բնական և մարդահարույց էվոլյուցիայի, բնական պաշարների փոփոխության, ջրաէկոհամակարգերի մաթ. մոդելավորման, Սևանա լճի բնական պաշարների վերականգնման և արդյունավետ օգտագործման հարցերին:

Հայ էկոլոգների միության նախագահ (1977): Միջազգ. էկոլոգ. (1998), ՌԲՆԳԱ (1998), ՀՀՄ (1999), Ազգ. անվտանգության հիմնախնդիրների միջազգ. (1999) ակադ-ների անդամ:

ՀՀ ԳԱԱ վաստակագիր:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ռաֆայել Սմբատի (1927–1996), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1976), պրոֆ. (1997): Աշխ-ները վերաբերում են տարածականորեն սահմանափակ համակարգերի հավասարակշռության և կայունության, նաև մագնիս. դաշտերի հետ փոխազդող դեղամիջոցների ուղղորդված տեղափոխման և կուտակման հարցերին: Ստացել է մագնիս. դաշտի առկայությամբ հարթ, գլանային և գնդային ինքնագրավիտացիոն կազմավորումների կայունության չափանիշները փոքր գրգռումների դեպքում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ռիչարդ (Տիգրան) Գասպարի (ծ. 1932), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1966), պրոֆ. (1969): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (1990): Բաֆֆի ***Հովհաննիսյանի*** հայրը: 1987-ից՝ Կալիֆոռնիայի համալսարանի (Լոս Անջելես) Մերձ. Արևելքի ուսումնասիրման «Ֆոն Գրունեբաում» կենտրոնի տնօրեն և հայ ժողղ-ի արդի պատմության ամբիոնի վարիչ: Աշխ-ները վերաբերում են ՀՀ (1918–20) և Հայոց ցեղասպանության պատմությանն ու պատմագրությանը: ԱՄՆ-ում Հայագիտ. ուսումնասիրությունների ընկ-յան հիմնադիրներից է, «Արմինիոն Ռևյու» (անգլ.) ամսագրի խմբագր. կոլեգիայի, մի շարք միջազգ. և ամերիկ. գիտ. ընկ-ների անդամ: Լույս է ընծայել «Հայաստանի Հանրապետություն» (հ. 1–4, 1971–96, անգլ., հայ.) հիմնարար աշխ-ը:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ռոբերտ Հազարապետի (1929–1992), մարզիչ: ՀՀ (1989), ԽՍՀՄ (1989) վաստ. մարզիչ: ԽՍՀՄ բռնցքամարտի հավաքականի մարզիչ (1979–92): Մարզել է Իսրայել ***Հակոբկոխյանին***:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ռուբեն Անդրանիկի (ծ. 1951), կլինիկ. ախտաբան-ֆիզիոլոգ, ռեանիմատոլոգ: Հայաստանում հիմնադրել է միկրոշրջանառության առաջին լաբորատորիան, 1993-ին ԱԱԻ-ի համալսարան. կլինիկան: Աշխ-ները վերաբերում են անհետաձգելի վիճակների և երկարատև ճնշման համախտանիշի (կրաշ-սինդրոմ), գլխուղեղի կաթվածի և գանգագլխուղեղ. վնասվածքների ժամանակ միկրոշրջանառության հարցերին: «Բժշկական սեղմագրերի հայկական հանդեսի» հիմնադիր-գլխ. խմբ. (2000–ից):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ռուսեթ Հովհաննեսի (1907–1971), գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1948): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1965): Հեղինակ է «Լերմոնտովի կյանքը և գրական ստեղծագործությունը» (1941), «Ռուս գրականությունը հայ հասարակական մտքի գնահատմամբ» (1949), «Լև Տոլստոյը և հայ գրական կյանքը» (1964) աշխ-ների:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Սամվել Գագիկի (ծ. 1954), թերապևտ, առողջապ-յան կազմակերպիչ: Բժշկ. գիտ. դ-ր (2007), պրոֆ. (2012): 1997–2011-ին՝ Առողջապ-յան ազգ. ինստ-ի ընտանեկան բժշկության ամբիոնի հիմնադիր-վարիչ, 1998–99-ին՝ ՀՀ առողջապ-յան փոխնախարար, 2011–14-ին՝ Երևանի Սրտաբանության ԳՀԻ տնօրեն: 2000-ից՝ Ընտանեկան բժիշկների հայկ. ընկերակցության հիմնադիր-նախագահ: Աշխ-ները վերաբերում են ներքին բժշկության, առողջապ-յան կազմակերպման, ընտանեկան բժշկության հարցերին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Սամվել Ռուբենի (ծ. 1946), ճարտարագետ-երկրաբան: Երկրբ. գիտ. դ-ր (2004): Աշխ-ները վերաբերում են ապարների մագնիս. հատկություններին, Երկրի մագնիս. դաշտի հարյուրամյա փոփոխականության և դրանց անկանոնության, երկրաշարժերի օջախների ու տեկտոնամագնիս. դաշտի հարաչափերի փոխկապվածության հարցերին, ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատմանը: Աշակել է Կովկասի և ՀՀ տարածքների տեկտոնամագնիս. քարտեզների պատրաստման եղանակներ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Սանասար Ռազմիկի (ծ. 1960), ըմբիշ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1980): Օլիմպ. խաղերի (1980), աշխարհի (1981), Եվրոպայի (1980, 1986), ԽՍՀՄ (1981, 1990) ազատ ոճի ըմբշամարտի չեմպիոն, աշխարհի և ԽՍՀՄ բազմակի գավաթակիր:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Սիմոն Պարգևի (ծ. 1940), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1990): 1976–ից՝ Հայաստանի կույրերի միավորման երաժշտ. կոլեկտիվների գլխ. տնօրեն և գեղ. ղեկ.: Հեղինակ է սիմֆ. պատկերների (1965), «Կոմիտաս» սիմֆ. պոեմի (1969), սիմֆոնիայի՝ երգչախմբի և նվագախմբի համար (1990), սիմֆ. նախերգանքի (1993), լար. կվարտետների, գործիք. սոնատների, ռոմանսների, խմբերգերի, դաշնամուր. պիեսների շարքի (կոմպոզիտորների միջազգ. IV մրցույթի 1-ին մրց.՝ 1988, Չեխոսլովակիա):

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2010):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Սմբատ Հասրաթի (1927–1988), իրավաբան: Իրավար. գիտ. դ-ր (1973), պրոֆ. (1976): Աշխ-ները վերաբերում են քաղաքաց. իրավունքի, ընտանեկան իրավունքի, քաղաքաց. դատավարության հարցերին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Սոկրատ Ստեփանի (1920–1996), նյարդավիրաբույժ: ՀՀ-ում նյարդավիրաբուժության հիմնադիրներից: Բժշկ. գիտ. թեկնածու (1951), դոցենտ (1963): ՀԽՍՀ վաստ. բժիշկ (1963): 1962–66-ին եղել է ԵԲԻ ռեկտոր: Աշխ-ները վերաբերում են նյարդ. համակարգի ծանր վնասվածքների ու դրանց հետևանքների, ուռուցքների, հետբորբոք. և անոթ. հիվանդությունների ախտորոշման ու վիրահատ. բուժման խնդիրներին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Սոնա Հովհաննեսի (ծ. 1963), խմբավար: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2010): «Հովեր» կամեր. երգչախմբի հիմնադիրը (1992, գեղ. ղեկ. և խմբավար): Հ-ի ղեկավարությամբ առաջին անգամ Հայաստանում հնչել են Ա. Հոնեգերի, Յ. Ս. Բախի, Բ. Բրիտտենի, Լ. Բազիլի, Ս. Բաբաթորոսյանի խմբերգ. երկերը:

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2008):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Սոֆյա Պետրոսի (ծ. 1939), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դ-ր (2001), պրոֆ. (2002): Բացահայտել է ենթաբջջ. կառուցվածքներում՝ պերօքսիսոմներում, D-ամինաթթվային օքսիդազների հետ L-ամինաթթվային օքսիդազ ֆերմենտի առկայությունը, որը հնարավորություն է տալիս կիտրոնաթթվի արտադր. շտամը՝ Aspergiellus niger բորբոսասունկը, օգտագործել DL-ամինաթթուներից L-ամինաթթուների անջատման, նաև բժշկության մեջ կիրառվող կետոթթուների ստացման համար:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Սպարտակ Սարիբեկի (1925–2008), կենսաֆիզիկոս: Կենսբ. գիտ. դ-ր (1968), պրոֆ. (1970): ՀՀ ԳԱԱ ակադ. (1995, թղթ. անդամ՝ 1991-ից): ՀՀ-ում մոլ. կենսբ-յան հիմնադիրներից: Ուսումնասիրել է սրտամկանի և կմախք. մկանների մոլ. ու ժառանգ. մեխանիզմները, տիեզ. թռիչքների ընթացքում մկան. սպիտակուցների կարգավորման առանձնահատկությունները: Չեխոսլովակիայի ԳԱ Բաբովի անվ. մրց.: Գրավիտացիոն կենսբ-յան միջազգ. կոմիտեի թղթ. անդամ (1982, Ստոկհոլմ):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ստեփան Սուրենի (1944–2008), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (1989), պրոֆ. (1990), ՌԲՆԳԱ ակադ. (2000): Սուրեն Ջ. *Հովհաննիսյանի* որդին, Սուրեն *Հովհաննիսյանի* հայրը: 1984-ին ԵԲԻ ԿԳՀԼ-ի հիմքի վրա ստեղծել է ոչ կլոստրիդիային անօդակյաց միկրոօրգանիզմների արտադր-յուն և նույնականացման լաբորատորիա: Առաջինն է անջատել անօդակյաց կոկերի մանրէահիմքը, որը պահեստված անօդակյաց միկրոօրգանիզմների առաջին թանգարանային նմուշն էր ԽՍՀՄ-ում: ՀՀ-ում առաջինն է ստեղծել (1976) ներստամոքսային pH-չափության լաբորատորիա, որը հնարավորություն է տվել իրականացնել թափառող նյարդի մոտակա ընտրող. հատում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Սուսաննա Գուրգենի (ծ. 1955), գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (2010): Հեղինակ է «Հովհաննես Թումանյանը և Հայ գրողների կովկասյան ընկերությունը» (2007), «Պատմություններ Թումանյանի կյանքից» (2010), «Հովհաննես Թումանյան. կյանքի և ստեղծագործության պատմությունը (1900–1912)» (2012) աշխ-ների:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Սուրեն Արմենակի (1909–1984), բժիշկ-ռենտգենաբան: Բժշկ. գիտ. դ-ր, պրոֆ.: ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ: 1946-ին մասնակցել է Ռենտգենաբանության և ուռուցքաբանության ԳՀԻ-ի կազմակերպմանը: Աշխ-ները վերաբերում են սրտի և անոթների, բրոնխների ու թոքերի, ստամոքսի, ոսկրերի հիվանդությունների ռենտգենյան ախտորոշման հարցերին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Սուրեն Եղիազարի (1914–1986), դերասան: ՀԽՍՀ ժող. արտիստ (1985): 1938–41-ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ., 1945–52-ին՝ Ստեփանավանի, 1952–86-ին՝ Կիրովականի դրամատիկ. թատրոնների դերասան (Գիժ Դանիել՝ Շիրվանզադեի «Չար ոգի», Պաղտասար՝ Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար», Մինտանելի՝ «Բոռ»՝ ըստ Է. Վոյնիչի, ևն):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Սուրեն Զաքարի (ծ. 1920), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (1965), պրոֆ. (1966): Ստեփան *Հովհաննիսյանի* հայրը: 1966–76-ին՝ ՀՀ գլխ. վիրաբույժ: Աշխ-ները վերաբերում են վիրաբուժ. արյունաբանության, որովայն. և կրծք. վիրաբուժության, պրոկտոլոգիայի, ուռուցքաբանության խնդիրներին: Առաջարկել է պոչուկային շրջանի բշտուռուցքների և էպիթել. խուղակների վիրահատությունների ժամանակ խորը կարերի դրման, ուղիղաղիք. խուղակների վիրահատման եղանակներ, ստամոքսի մասնահատման («Բիլրոթ-2 անկյունային մասնահատում») նոր ձևափոխություն:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Սուրեն Հայկի (ծ. 1938), փիլ.: Փիլ. գիտ. դ-ր (1997), պրոֆ. (2004): Աշխ-ները վերաբերում են փաստարկման տեսությանը:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Սուրեն Ստեփանի (ծ. 1974), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (2010): Ստեփան *Հովհաննիսյանի* որդին, Սուրեն Ջ. *Հովհաննիսյանի* թոռը: 2014-ից՝ ԵՊԲՀ Սիմուլյացիոն ուս. կենտրոնի ղեկ.: Աշխ-ները վերաբերում են մակերիկամի ուռուցքների ախտորոշմանն ու վիրաբուժ. բուժման եղանակներին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Սևադա Մկրտչի (ծ. 1948), ճարտարագետ-մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1988), պրոֆ. (1992): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006): ՀՀ ԳԱԱ ԵՃՄԻ-ի տնօրեն (1989–2013): Աշակել է մեթոդ, որը հնարավորություն է տալիս երկրաֆիզիկայի եռաչափ խնդիրները դարձնել երկչափ, կառուցել երկրակեղևի խտության մոդել: Հայկ. գիտ. և ճարտարագիտ. ընկ-յան Վ. Համբարձումյանի անվ. մրց. (2001):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Վահան Էդուարդի (1956–2014), քաղ. գործիչ, հնագետ: 1995–98-ին բանտարկվել է քաղ. դրդապատճառներով: 2008-ին առաջադրվել է ՀՀ նախագահի թեկնածու: 1998–99-ին՝ ՀՀ նախագահի խորհրդական: 2003 և 2007-ին՝ ՀՀ ԱԺ փոխնախագահ: 2013-ից՝ ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան ԳԴՀ-ում: Հեղինակ է «Մանդիլիոն» (2013, ռուս., հայ., անգլ.) վեպի, «Մայրամուտ, որը հարկավոր է կասեցնել» (հրտ.՝ 2015) հոդվածների ժող-ի:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Վահան Հովհաննեսի (1921–1996), հոգեբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (1971), պրոֆ. (1972): Աշխ-ները վերաբերում են Հայաստանի երկրամաս. ախտաբանություն համարվող մալարիային պսիխոզների, նաև հաշիշամոլության և ալկոհոլամոլության կանխարգելման ու բուժման հարցերին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Վահե Վաղինակի (ծ. 1979), իրավաբան: Իրավար. գիտ. դ-ր (2011): Աշխ-ները վերաբերում են ՀՀ-ում դատ. կարգով իրավ. ակտերի վերանայման, առևտր. արբիտրաժի, քաղաքաց. դատավարության և այլ հարցերի:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Վանյա (Ավանեսյան Իվան) Միսակի (1905–2001), դերասան, ռեժ.: Ադրբ. ԽՍՀ ժող. արտիստ (1982): 1928–32-ին՝ Գրոզնիի ռուս., Բաքվի հայկ., 1932-ից՝ Ստեփանակերտի (1958–68-ին՝ գլխ. ռեժ.) թատրոնների դերասան (Սուրեն՝ Շիրվանզադեի «Պատվի համար», Նազար՝ Գ. Դեմիրճյանի «Քաջ Նազար», ևն): Բեմադրել է Գ. Սունդուկյանի «Էլի մեկ զոհ», Մ. Գորկու «Հատակում» և այլ գործեր:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Վաչագան Արտաշեսի (1929–2010), մանկավարժ: Մանկավարժ. գիտ. դ-ր (1986), պրոֆ. (1988): Աշխ-ները վերաբերում են մաթ-ի դպրոց. ուսուցման բովանդակության ընտրության չափանիշների և սկզբունքների համակարգին: ՀՀ մանկավարժ. (1998) և Մանկավարժ. կրթության միջազգ. (1998) ակադ-ների անդամ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Վարուժան Ստեփանի (ծ. 1952), կենդանաբան: Կենսբ. գիտ. դ-ր (2013): Աշխ-ները վերաբերում են ՀՀ-ում միջատների տեսակ. կազմին և էկոլոգ. առանձնահատկություններին, արյունածուծ միջատների դերին՝ հիվանդությունների տարածման մեջ, դրանց դեմ կենսբ. պայքարին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Վիկտոր Անտոնի (ծ. 1948), նկարիչ: Հեղինակ է գեղանկարչ. («Հաղթական պար», պաննո, 2007, «Հայոց գիրը-Տաճար», 2012, ևն), գրաֆիկ. («Ընտանիք», շարք, 2008) գործերի, բնանկարների, գրքերի նկարազարդումների (Բ. Վերդյանի «Ծաղիկներս մնացին հեռվում», 1990, Վ. Գյոթեի «Անտառի արքան», 2012, ևն), նաև նկարիչ Վ. Գայֆեճյանի հուշաքարի (2012, Ախալցխա):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Վոլոդյա (Վլադիմիր) Համբարձումի (ծ. 1948), իրավաբան: Իրավար. գիտ. դ-ր (2011), պրոֆ. (2011): ՀՀ Սահմանադր. դատարանի անդամ (1996-ից): Աշխ-ները վերաբերում են միջազգ. իրավունքում քր. արդարադատության սկզբունքներին, պետ., վարչ. իրավունքի տարբեր հարցերի:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Տանյա Տաճատի (1947–1988), բանաստեղծուհի: Հեղի-

նակ է «Հրաբուխի ծաղիկ» (1986), «Բաց հրապարակ» (1990) ժող–ների: ՀԳՄ Ա. Իսահակյանի անվ. մրց. (1990, հետմահու): Զոհվել է Սպիտակի երկրաշարժի ժամանակ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Րաֆֆի Ռիչարդի (ծ. 1959), իրավաբան, պետ., քաղ. գործիչ: Իրավագիտ. դ–ր (1985): Ռիչարդ *Հովհաննիսյանի* որդին: 1989–ին՝ Ամերիկայի հայ փաստաբանների միության հիմնադիր–տնօրեն: Հայաստանում Ամերիկայի հայկ. համագումարի գրասենյակի տնօրեն (1990): 1991–92–ին՝ ՀՀ ԱԳ նախարար: 1994–ին հիմնադրել է Ռազմավար. և ազգ. հետազոտությունների հայկ. կենտրոնը (Երևան), որը ղեկավարել է մինչև 2009–ը, 2002–ին՝ «Ժառանգություն» կուս–յունը: 2007–ին ընտրվել է ՀՀ ԱԺ պատգմ., եղել «Ժառանգություն» պատգամավոր. խմբակցության ղեկ.: 2013–ին առաջադրվել է նախագահի թեկնածու: 2000–ին կնոջ՝ Արմենուհի Հովհաննիսյանի հետ հիմնադրել է *«Օրրան»* բարեգործ. ՀԿ: Աշխ–ները նվիրված են ՀՀ (1918–20) արտաքին քաղ–յանը, 1921–ի Փետր. ապստամբությանը, Հայոց ցեղասպանության ճանաչման իրավ. խնդիրներին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Քնարիկ Վասակի (1926–2015), նկարչուհի: Հեղինակ է դիմանկարների («Ինքնանկար», 1972, 1984, ևն), բնանկարների («Վերնաշենի լեռնեը», 1975, «Ոչխարակիթ լեռներում», 1980, «Սևանի երկինքը», 1984, ևն), նատյուրմորտների («Նատյուրմորտ դեղին գամմայով», 1973, «Նատյուրմորտ ճերմակ սկահակով», 1976, ևն):

ՀՈՎՀԱՐԱԲԵԳԱՎՈՐՆԵՐ, բզեզների ընտանիք: Երկ.՝ 3–6 *մմ*: Հայտնի է մոտ 400 տեսակ՝ տարածված լայնորեն: Արուների բեղերը հովհարանման են կամ սանրանման: Թրթուրները կրետների, մեղուների, խավարասերների մակաբույծներ են:

ՀՈՎՀԱՐԱԹԵՎԱՎՈՐՆԵՐ, միջատների ընտանիք, ազգակից են բզեզներին: Երկ.՝ 2–2,5 *մմ*: Արուների հետին թևերը հովհար են ձևավորում: Հայտնի է շուրջ 300 տեսակ: Էգերը մեղուների, կրետների, մլուկների ներքին մակաբույծներ են:

ՀՈՎՆԱԹԱՆ (Կարապետյան) Հարություն Հովհաննեսի (ծ. 1937), բանաստեղծ, թարգմանիչ, խմբ.: 1984–88–ին՝ Սասիսի շրջ. «Նոր ուղի» թերթի խմբ.: Հեղինակ է «Ճամփեզրի ծառը» (1977), «Աղոթարան» (1990), «Արևն այստեղ է» (2010) և այլ բանաստեղծությունների, «Զրույցներ. Հովհաննես Շիրազ» (1992), «Ո՞ւր ես գնում, Տիգրան Մանսուրյան» (1996), «Ծիածանվող հոգիներ» (2012, ՀԳՄ Մ. Սարգսյանի անվ. մրց.), «Հոգին հոգու հետ» (2013), «Խոսում, խոսեցնում է Համո Սահյանը» (2014) և այլ գրույցների ժող–ների: Թարգմ–յուններ է արել վրաց–ից և ռուս–ից:

ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆ Կարո Թովմասի (1902–1970), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1937), պրոֆ. (1943): Ուկր. ԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1963): Աշխ–ները վերաբերում են սրտի ձեռքբերովի արատների, ստոծանու, լյարդի, լեղուղիների, փայծաղի, բարակ աղիների ուռուցքների բուժման վիրաբուժ. հարցերին: ԽՍՀՄ–ում առաջինն է կիրառել երիկամների և շագանակագեղձի թերջերմային վիրահատությունների եղանակ: ԽՍՀՄ ԲԳԱ Ս. Ի. Սպասոկուկոցկու անվ. մրց. (1952):

ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆ Հակոբ Մկրտումի, **Նաղաշ Հակոբ** (1806–1881), նկարիչ: 1865–ից ստեղծագործել է Թավրիզում, ապա՝ Թեհրանում, եղել շահի պալատ. նկարիչը: Նրա ստեղծած դիմանկարները (Մարտիրոս Օրբելյանի, Թովմաս Թովմասյանի, Դե Կորմիկի, Ներսես Աշտարակեցու ևն) գրկ–յան մեջ հայտնի են «Հովսաթանյան դպրոց» կամ «XIX դ–ի 1–ին կեսի թիֆլիսյան դպրոց» անվամբ: Հ–ի արվ–ը խոր հետք է թողել ժամանակի գեղանկարչության զարգացման վրա, նաև ուղենշել է ազգ. արվ–ի զարգացման ընթացքը: Ս. Պետերբուրգի գեղարվ–ի ակադ–ի «Ոչ դասական նկարչի» կոչում (1841, Ե. Ա. Գոլովինի դիմանկարի համար), նաև ոսկե մեդալ և 14–րդ դասի աստիճանավոր (1842): «Նաղշը Բաշի» (նկարիչների գլխավոր), «Էլմի» (գիտութ–յուն) շքանշան:

ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆ Հովսաթան Հակոբի (1730–ական թթ–1801/02), նկարիչ: Աշակերտել է հորը՝ *Նաղաշ Հակոբին*: Հեղինակ է Էջմիածնի վանքի զարդանկարների (1760–ական թթ.), Երևանի խանի պալատի ձևավորումների: 1776–ից՝ Վրաց Հերակլ II թագավորի պալատ. նկարիչը: Հայ արվ–ում ստեղծել է հանդիսային դիմանկարի առաջին նմուշները: Թեմատիկ պատկերներից են՝ «Ավետումը Մարիամ», «Մոգերի երկրպագությունը», «Խորհրդավոր ընթրիք» (Էջմիածնի տաճար), «Աստվածամոր փառքը» ևն: Հ–ի ստեղծագործությունը եզրափակում է XVII դ–ում սկզբնավորված հայ նոր արվ–ի զարգացման կարևոր փուլը:

ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆ Ռուբեն Հայկազի (1940–1999), նկարիչ: Հեղինակ է բնանկարների («Կեսօր», 1973, ևն), թեմատիկ հորինվածքների («Խորհրդավոր ընթրիք», 1995, «Ավետում», 1997, ևն), դիմանկարների («Հարդարվելիս», շարք, 1980–89, ևն): ՀԼԿԵՄ մրց. (1976):

ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆՆԵՐ, XVII–XIX դդ–ի նկարիչների ընտանիք: Տոհմի հիմնադիրը՝ գրիչ, ծաղկող Հովհաննես (Յոհան Շոռոթեցի, ծ. թ. անհտ–1679) քհն.: Շոռոթում (Նախիջևան) ընդօրինակել է 2 Ավետարան (1653, 1663, Մտնդ., ձեռ. № 2494, 9242) և Հայսմավուրք (1662–63, Մտնդ., ձեռ. № 7363): Գրիչ և մանրանկարիչն էր Հովհաննեսի որդին՝ **Մարգար** դպիրը: 1679–ին Շոռոթում ընդօրինակել է ժող. (Մտնդ., ձեռ. № 4418): Մարգարի որդին՝ տիրացու **Հայրապետը**, 1765–ին Ագուլիսում ընդօրինակել է Նաղաշ Հովնաթանի Տաղարանը (ձեռ. № 4426): Նաղաշ Հովնաթանի որդին՝ **Հարությունը** (Հարություն Շոռոթեցի), ձևավորել է Գրիգոր Տաթևացու «Քարոզգիրքը» (1731, ձեռ. № 2162): *Նաղաշ Հակոբ* և Հարություն Շոռոթեցի Հովնաթանյան եղբայրները Սբ Էջմիածնում պատկերազարդել են Հայսմավուրք (1725–30, Մտնդ., ձեռ. № 1533), որմնազարդել Ապրակունիսի Սբ Կարապետ վանքը (1741), վեհարանը, եկեղեցիներ Աստապատում և Ազնաբերդում: Նաղաշ Հակոբի որդին է Հովնաթան *Հովնաթանյանը*, նրա որդին՝ **Մկրտումը** (1779–1845/46), դիմանկարիչ էր (Եփրեմ կաթողիկոսի, Ս. Գուրգենբեկյանի դիմանկարները, հայ թագավորների դիմանկարների շարքը, նաև Թիֆլիսի Նորաշեն եկեղեցու որմնանկարները, 1834–35): Մկրտումի որդիներն են Հակոբ *Հովնաթանյանը* և դիմանկարիչ **Աղաթոնը** (1816–1893), վերջինս զբաղվել է գրաֆիկայով, վիմագրել նկարիչների գործերից: Հ. սկզբնավորել են հայկ. կերպարվ–ի մի շարք սկզբունքներ, ժանրեր, կանոններ, որոնք օգտագործվել են ժամանակի կողմից. գեղանկարչության մեջ:

ՀՈՎՆԱՆ, ըստ Հին կտակարանի՝ 12 փոքր մարգարեներից, իր համանուն գրքերից մեկի գլխ. գործող անձը: Աստված պատգամել էր Հ–ին՝ տեղեկացնել ասոր. Նինվե ք–ի բնակիչներին, որ նրանք պատժվելու են, սակայն Հ. չի կատարել Աստծու կամքը և նավով մեկնել է դեպի Փարսիս: Ճանապարհին նավաբեկության ժամանակ Հ–ին կուլ է տվել հսկա կետը, որի փորում նա անցկացրել է 3 օր: Աստծու հրամանով կետը Հ–ին ցամաք է նետել: Հնազանդվելով Աստծուն՝ Հ. կատարել է նրա պատգամը, Նինվեի բնակիչներն ապաշխարել են՝ Աստծու առաջ մեղանչելու համար, Աստված նրանց ներում է շնորհել: Հ–ի՝ 3 օր կետի մարմնում մնալն Աստվածաշնչում խորհրդանշում է Հիսուս Քրիստոսի մահն ու հարությունը:

ՀՈՎՆԱՆ (Հովհաննիսյան) Գուրգեն Ներսեսի (1910–2000), գրականագետ, խմբ., գրող: Բանասիր. գիտ. դ–ր (1963), պրոֆ. (1964): 1940–41–ին՝ ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների» ամսագրի խմբ.: Հիմնադրել և խմբագրել է «Հայաստանի և հայ կուլտուրայի մասին» մատենաշարը: Հեղինակ է «Ստեփան Շահումյանը և Մաքսիմ Գորկին» (1934), «Ռուս–հայ գրական կապերը XIX–XX դարերում» (գիրք 1–2, 1960–61), «Լուի Արագոնը Հայաստանի և հայ մշակույթի մասին» (1985) և այլ աշխ–ների, արձակ բանաստեղծությունների, «Էմմա» (1934) վեպի, «Կյանքը փակ նամակներում» (1937), «Նովելներ» (1946) պատմվածքների ու նովելների ժող–ների, «Ավետիք Իսահակյան» (1976) հուշապատումի:

ՀՈՎՆԱՆ ԽՈՒԹԵՑԻ (ծ. թ. անհտ–852), Արաբ. խալիֆության դեմ ազատագր. պատերազմի առաջնորդ: 851–ին Հ. Խ–ու գլխավորած Խութի և Սասունի ապստամբները ազատագրել են Տարոնը, ջախջախել Մուշում ձմեռող արաբ. պատժիչ զորքին և սպանել զորապետ *Յուսուֆին*: 852–ին Հայաստան ներխուժած արաբ զորավար *Բուղան* գերել է Հ. Խ–ուն և, չկարողանալով նրան հավատուրացություն հարկադրել, գլխատել է: Ենթադրվում է, որ նրա կերպարի որոշ առանձնահատկություններ ժողդ–ը վերագրել է *Զևնով Օհանին*:

ՀՈՎՆԱՆ ՄՇԵՑԻ, XVIII դ–ի 2–րդ կեսի ազգ–ազատագր. շարժման գործիչ: Մշո Սբ Կարապետ վանքի վանահայր Հ. Մ. 1760–ական թթ–ի սկզբին նամակագր. կապ է հաստատել *Հովսեփ Էմինի* հետ, հավանություն տվել Հայաստանն ազատագրելու նրա ծրագրին: 1764–ի մարտին Վրաստանի թագավոր Հերակլ II–ը Հ. Մ–ուն ուղարկել է օգնության խոստմամբ նամակ, որն ընկել է Երևանի խանի ձեռքը:

ՀՈՎՆԱՆՅԱՆ Բելա (Լորետա) Օգսենի (ծ. 1935), բալետի արտիստուհի: ՀՀ ժող. արտիստ (1976): 1955–80–ին՝ ԵՕԲԹ–ի մենապարուհի (Գայանե, Ֆրիգիա՝ Ա. Խաչատրյանի «Գայանե», «Սպարտակ», Մոխրոտ՝ Ս. Ս. Պրոկոֆևի «Մոխրոտը», Հարնացու՝ Գ. Հախինյանի «Լոռեցի Սաքո», ևն), 1983–ից՝ բալետի խմբի փորձավար: Համաշխ. VI փառատոնի դափնեկիր (1956, Մոսկվա):

ՀՈՎՆԱՆՅԱՆ Կառլեն Օգսենի (ծ. 1938), մանրէաբան, բջջաբան: Կենսբ. գիտ. դ–ր (2007): Աշխ–ները վերաբերում են մանրէաբանության, վիրուսաբանության, մանկաբուժաբանության, մոլ. և բջջ. կենսբ–յան խնդիրներին:

ՀՈՎՆԱՆՅԱՆ Հարություն (1880–1959), խմբ., մանկավարժ: 1910–20–ին Կ. Պոլսում զբաղվել է գր–հրապարակախոս. գործունեությամբ, 1920–ին ԱՄՆ–ում աշխատակցել է տեղի հայկ. մամուլին, 1941–48–ին՝ ամերիկահայ վարժարանների ընդհ. տեսուչ: Հեղինակ է «Էվերեկ–Ֆենևսեի հայոց բարբառը» (Իզմիրյան գր. մրց.՝ 1915) աշխ–յան:

ՀՈՎՆԱՆՅԱՆ Հրայր Ստեփանի (ծ. 1930), ճարտարագետ–ձեռնարկատեր, հաս. գործիչ, բարերար: Վահագն *Հովհաննյանի* եղբայրը: 1951–ից՝ ԱՄՆ–ում: 1958–ից «Հովնանյան եղբայրներ» ընկ–յան նախագահն է ու սեփականատերը: Ամերիկայի հայկ. համագումարի հիմնադիրներից (1976–ից՝ նախագահ, 2006–ից՝ պատվո նախագահ), «Հայաստան» համահայկ. հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ (1992–ից): 1996–ին Վաշինգտոնում հիմնել է *Հայկական ազգային ինստիտուտը* («ANI»), 1986–ին ստեղծել է «Հրայր և Աննա Հովնանյան հիմնադրամը» (ՀՀ–ում՝ 2006–ից), որի նպատակը սփյուռքահայ համայնքներում և հայրենիքում բարեգործ., կրթ., հոգևոր, գիտ., գր. ծրագրերին աջակցելն է:

ՀՈՎՆԱՆՅԱՆ Ղևոնդ (1817–1897), բանասեր, լեզվաբան, խմբ., թարգմանիչ: Պողոս *Հովնանյանի* եղբայրը: ՎննՄՄ անդամ (1838): 1887–90–ին՝ *«Հանդէս ամսօրեայ»*–ի առաջին խմբագրապետը: Հեղինակ է «Քերականութիւն գաղղիերէն լեզուի» (հ. 1–3, 1843–44), «Մարտինոս Լուտերին վարուց եւ նորոգութեան պատմութիւնը» (1850), «Մեծն Ներսէս եւ Հայաստանի վրայ ունեցած ազդեցութիւնը» (1851), «Պատմութիւն քաղաքականութեան եւրոպական տէրութեանց ընդհանրապէս» (հ. 1–4, 1856–60), «Աղօթագիրք պաշտօնասիրաց Սրբոյն Յովսէփայ Աստուածահօր» (1883) և այլ աշխ–ների: Թարգմանել է Ժ. Բոսյուեի «Խօսք վասն տիեզերական պատմութեան» (Հ. Գաթրճյանի և Ա. Գարագաշյանի հետ, 1841), Կ. Նեպոտի «Վարք զօրավարաց անուանեաց» (1842) աշխ–ները:

ՀՈՎՆԱՆՅԱՆ Պողոս (1802–1884), լեզվաբան, պատմաբան, մանկավարժ: Ղևոնդ *Հովնանյանի* եղբայրը: ՎննՄՄ անդամ (1824): Հեղինակ է «Հրահանգք աստեղագիտական ի վերայ գիտաւոր աստեղաց» (1841), «Պատմութիւն տիեզերական ժողովոց եկեղեցւոյ...» (1847), «Մարդկային լեզուին սկզբան, հանգամանաց, միութեան ու բաժանման եւ ազգային լեզուաց վրայ քննական տեսութիւն մը» (1857), «Ուսումն ազգային դաստիարակութեան» (1862), «Պատմութիւն Իտալիայի: Ի սկզբանէ մինչև մեր օրերը» (1864) և այլ աշխ–ների:

ՀՈՎՆԱՆՅԱՆ Սիմոն Պետրոսի (1909–1975), ճարտարագետ–ջրաշինարար: Տեխ. գիտ. թեկնածու (1947), պրոֆ. (1960): ՀԽՍՀ վաստ. շինարար (1957), ՀԽՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1967): Աշխ–ները վերաբերում են կառույցների ստատիկայի տարբեր հարցերի և կամրջաշինությանը: Հ–ի նախագծով և ղեկավարությամբ է կառուցվել Երևանի Հաղթանակի կամուրջը:

ՀՈՎՆԱՆՅԱՆ Սուրեն Վարդանի (1927–1975), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1969), պրոֆ. (1972): Հիմն. աշխ–ը վերաբերում է հայ–բուլղ. կապերի և բուլղարահայ գաղթավայրի պատմությանը:

ՀՈՎՆԱՆՅԱՆ Վահագն Ստեփանի (1932–2015), գործարար, հաս. գործիչ, բարերար: Հրայր *Հովհաննյանի* եղբայրը: 1969–ին հիմնադրել է «Hovhit» անշարժ գույքի շին–յան, ապա՝ «Callular Vision» հեռահաղորդակցության ընկ–ների, 1998–2015–ին՝ «Հովնանյան Ինթերնեյշնլ» և «Հովնանյան Գրուպ» ընկ–ների նախագահ: Հ–ի նախաձեռնությամբ 1998–ից Երևանում կառուցվում է «Վահազնի» թաղամասը: Հ. բարեգործ. ծրագրերով նպաստել է հայ մշակույթի և ՀՀ–ում զբոսաշրջության զարգացմանը:

ՄՏԿԿ ասպետի պատվ. կոչում (1969), ՀԱԵ «Սբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշան:

ՀՈՎՆԱՆՅԱՆ ԴՊՐՈՑ, Մարիամյան - Հովնանյան օրիորդաց դպրոց, հիմնադրվել է 1877–ին Թիֆլիսում՝ չքավորների և որբ աղջիկների համար: Եղել է հինգդասյան: Փակվել է 1885–ին, վերաբացվել 1886–ին՝ որպես երկդասյան տարր. դպրոց: 1887–ից՝ Մարիամյան–Հովնանյան: 1908–ից՝ միջնակարգ: Գործել է մինչև 1920–ը:

ՀՈՎՍԵՓՈՍ ՓԼԱՎԻՈՍ (Josephus Flavius, 37–100–ից հետո), հրեա պատմագիր: Գերել են հռոմեացիները: 69–ին Վեսպասիանոս կայսրն ազատել է գերությունից: 73–ին ապրել է Հռոմում, գրել է «Հրեական պատերազմի մասին» (գիրք 1–7, հավանաբար ավարտել է 75–79–ին), «Հրեական հնախոսություն» (գիրք 1–20, 94–ին) և այլ աշխ–ներ:

ՀՈՎՍԵՓ, *Հակոբի* 11–րդ որդին, որին, ըստ Հին կտակարանի, եղբայրները վաճառել են ստրկության: Հ. երկար չարչարանքներից հետո արժանացել է Եգիպտոսի փարավոնի բարեհաճությանը, որը նրան մեծ լիազորություններ է շնորհել և հանձնարարել նախապատրաստվել սովի 7 տարիներին: Հ. Եգիպտոս ժամանած եղբայրներին բացահայտել է իր ինքնությունը և հանձնարարել հորն ու ողջ ընտանիքը տեղափոխել Եգիպտոս: Հ–ի պատմությանն անդրադարձել են գր. բազմաթիվ գործերում:

ՀՈՎՍԵՓ, Հովսեփ–Եպափրոդիտոս (ծ. թ. անհտ–778), Պավլիկյան աղանդավոր. շարժման առաջնորդ՝ 748–ից: Հալածանքներից խուսափելով՝ իր հետևորդներով նախ ապաստանել է Պոնտոսի Եպիսպարիս ավանում, ապա՝ Պիսիդիայի Անտիոք ք–ում, և 30 տարի քարոզել պավլիկյան ուսմունքը: Հիմնադրել է պավլիկյանների հայտնի 6 համայնքից մեկը՝ Փիլիպպեցվոցը:

ՀՈՎՍԵՓ, Աղվանից կաթողիկոս՝ XI դ–ի 1–ին կեսին: 1038/39–ին Անիում հրավիրել է ժողով, որը կաթողիկոս. աթոռին վերահաստատել է *Պետրոս Ա. Գետադարձին*: Աջակցել է Հայոց և Աբխազաց գահակալներին՝ Դվինի ամիրա Աբուլ Ասվարի դեմ պայքարում:

ՀՈՎՍԵՓ, XV դ–ի վերջ–XVI դ–ի սկզբի գրիչ, մանրանկարիչ: Վասպուրականում ընդօրինակած և նկարազարդած ձեռագիր մատյաններից 3–ը և ենթադրաբար նրան վերագրվող Գանձարանը (XV դ–ի վերջ) պահվում են Մտնդ–ում, որոնցում նկատելի է Վասպուրականի մանրանկարչության դպրոցի «դասական» շրջանի (XIV դ.–XV դ–ի 1–ին կես) ոճ. ու պատկերագր. սկզբունքների վերասերումը:

ՀՈՎՍԵՓ Ա ՀՈՂԼՈՅՄԵՑԻ, սուրբ Հովսեփ Վայոցձորցի (ծ. թ. անհտ–452), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 440–ից: *Մեսրոպ Մաշտոցի* աշակերտներից: Եղել է Այրարատի եպս., ապա Մեսրոպ Մաշտոցի պատվիրանով կարգվել կաթողիկոս: Նրա նախաձեռնությամբ 444–ին գումարվել է Շահապիվանի եկեղեց. ժողովը, 449–ին՝ Արտաշատի ժողովը: Մասնակցել է Սասանյանների դեմ 450–451–ին հայերի մղած ազատագր. պատերազմին: Ավարայրի ճակատամարտից (451–ի մայիսի 26) հետո ձերբակալվել և աքսորվել է Վրկան երկրամաս, ապա տեղափոխվել Ապար աշխարհ, որտեղ և նահատակվել է Ղևոնդյանց խմբի հետ:

ՀՈՎՍԵՓ Ա ՂԱԹԱՄԱՐՑԻ (ծ. թ. անհտ–1544), մշակույթի և կրթ. գործիչ, բանաստեղծ, գրիչ, ծաղկող, վրդ. (1533): Աղթամարի մանրանկարչ. դպրոցի հիմնադիրներից: Ապրել և գործել է Աղթամարի վանքում, նաև Լիմում, որտեղ նկարազարդել ու ընդօրինակել է գրչագիր Ավետարաններ, Տոնացույց, Շարակնոց, Սաշտոց: Հ. Ա–ուց հայտնի են «Երկու վնաս կայ ահագին» (Մտնդ., ձեռ. № 5837), «Խրատ գրքերը լաւ պահելուն» բանաստեղծությունները և «Գերի Աղամայ որդի» սկսվածքով կաֆան Խվիենայի (ձեռ. № 977), Երևանի (ձեռ. № 5622, 6485, 10275) մտնդ–ների:

ՀՈՎՍԵՓ ԱՐՑԱԽԵՑԻ (Տեր–Ավագյան), XIX դ–ի 1–ին կեսի տրամաբան, փիլ., եկեղեց. գործիչ: Հեղինակ է «Համառօտ բառգիրք ի գրաբառէ յաշխարհաբառն» (հրտ.՝ 1830) և «Առաջին մասն փիլիսոփայութեան, որ ասի տրամաբանութիւն» (հրտ.՝ 1840) աշխ–ների:

ՀՈՎՍԵՓ Բ ՓԱՐՊԵՑԻ, Կարիճ (ծ. թ. անհտ–806), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 795–ից: Դիմադրել է արաբ. Խուզեյմա ոստիկանի՝ կաթողիկոս. կալվածները բռնագրավելու փորձերին: Ոստիկանը նրան բրածեծ է արել ու բանտ նետել, բայց *Հարուն ալ Ռաշիդ* խալիֆն ազատ է արձակել Հ. Բ Փ–ուն, վերադարձրել կաթողիկոս. կալվածների մեծ մասը:

ՀՈՎՍԵՓ ԳԵՆԵՍԻՈՍ, X դ–ի բյուզանդացի մատենագիր: Ֆ. Ֆիշերի կարծիքով՝ Հ. Գ. հայազգի Կոստանդին անունով մի գործչի որդի է: Կոնստանդին VII Ծիրանածինի հրամանով 945–959–ին գրել է «Թագավորությունից» (հայ. հրտ.՝ «Գիրք թագավորաց», 1834) երկը, որտեղ շարադրել է 813–886–ի Բյուզանդիայի պատմությունը:

ՀՈՎՍԵՓ ԴԻՆԵՐԵԿՅԱՆ Խատինի, XVIII դ–ի 2–րդ կեսի դիվանագետ, ճանապարհորդ, հայ ազգ–ազատագր. շարժման գործիչ: Հինգհարյուրապետի պաշտոնով ծառայել է Վրաստանի թագավորներ Հերակլ II–ի (1744–98) և Գիորգի XII–ի (1798–1801) արքունիքներում, պաշտոն. ուղևորություններ կատարել Իրաք, Հնդկաստան, այլ երկրներ: Հ. Դ–ի միջոցով Հերակլ II–ը, *Հակոբ Ե Շամախեցին* և *Սիմեոն Ա. Երևանցին* նամակագր. կապ են պահպանել Շահամիր *Շահամիրյանի* հետ: Վերջինիս պատվերով 1782–ին Էջմիածին է բերել Վենետիկում 1778–ին տպագրված «Աշխարհացոյց Հայաստանեայցը», ապա մեկնել է Հնդկաստան, Շ. Շահամիրյանին է հանձնել Հերակլ II–ի 1786–ի հրովարտակը՝ նրան իշխան. կոչում շնորհելու մասին:

ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆ (1726–1809), ազգ–ազատագր. շարժման գործիչ: 1744–ին ընտա–

նիքով տեղափոխվել է Կալկաթա, 1751-ին մեկնել Անգլիա: 1757–58-ին մասնակցել է Յոթնամյա պատերազմին: 1758-ին տեսակցել է Անգլիայի վարչապետ Ու. Պիտտի հետ: 1761-ին Ս. Պետերբուրգում կանցլեր Մ. Ի. Վորոնցովին և փոխկանցլեր Ա. Մ. Գոլիցինին ծանոթացրել է Հայաստանն ազատագրելու և Ռուսաստանի հովանավորությամբ հայ-վրաց. դաշնային պետություն ստեղծելու իր ծրագրին: 1763-ին եկել է Վրաստան, որտեղից 1764-ին Հերակլ II-ը արտաքսել է նրան (հակաավատատիր. հայացքների համար): 1766-ին Ղարաբաղում հանդիպել է *Հովհաննես Հասան-Ջալալյանի* և մելիքների հետ, բայց չի կարողացել ապստամբություն կազմակերպել: 1767-ին վերադարձել է Վրաստան, սակայն դարձյալ արտաքսվել է և մեկնել Հնդկաստան. 1773-ին սերտ հարաբերություններ է հաստատել Շահամիր *Շահամիրյանի* հետ և մասնակցել Մադրասի խմբակի գործունեությանը: 1777–83-ին գործել է Նոր Ջուղայում: 1783-ից վերջնականապես հաստատվել է Հնդկաստանում: 1788-ին գրել է «Հովսեփ Էմին հայի կյանքն ու արկածները» (հրտ.՝ 1792, 1918, անգլ., հայ. թարգմ.՝ 1958) ինքնակենսագր. երկը:

ՀՈՎՍԵՓ ՊԱՂՆԱՑԻ, V դ-ի թարգմանիչ, հայոց այբուբենի ստեղծման նպատակով *Մեսրոպ Մաշտոցի* հետ Ասորիք մեկնած աշակերտներից: *Հովհան Եկեղեցացու* հետ մասնակցել է Աստվածաշնչի թարգմ-յանը: Հ. Պ., *Վևոնդ Երեցը, Կորյունը* կարգվել են հուն-ի թարգմանիչներ: Թարգմանելու համար իրենց հետ հայրենիք են բերել Աստվածաշնչի լավագույն օրինակը և Նիկիայի ու Եփեսոսի ժողովների կանոնները:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Ալեքսան Արմենակի (1927–2008), անասնաբույժ-հյուսվածաբան: Անասնաբուժ. գիտ. դ-ր (1973), պրոֆ. (1975): Ուսումնասիրել է հոի կովերի կարունկուլա-կոտիլեդոնային կապի զարգացման դինամիկան և ընկերքի հետծննդյան հապաղման պատճառները, մշակել դրանց վերացման եղանակներ:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Աղվան Գառնիկի (ծ. 1953), իրավաբան, պետ. գործիչ: Իրավաբ. գիտ. դ-ր (2005): ՀՀ արդարադատության 1-ին դասի պետ. խորհրդական (1998): ՀՀ վաստ. իրավաբան (2003): 1998–99-ին և 2007–13-ին՝ ՀՀ գլխ. դատախազ, 2014-ից՝ ՀՀ քննչ. կոմիտեի նախագահ: 2002-ից՝ Նիգ-Ապարան հայրենակց. բարեգործ. հաս. կազմ-յան պատվ. նախագահ: Կազմել է քրեագիտ. բառարան: Աշխ-ները վերաբերում են դատախազ. հսկողության, խուլիգանության կանխման և այլ հարցերի: Բնության և հաս-յան մասին գիտների միջազգ. ակադ-ի անդամ (2004):

ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի (2006), «Մխիթար Գոշ» (2015), ՀՀ ՄՆ ոսկե (2005), ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամի մեդալներ, ՌԴ Պատվո շքանշան (2012):

ՀՈՎՍԵՓՅԱՆ Անդրանիկ Ռուբենի (1914–1968), գրող: 1939–64-ին՝ ՀԳՄ Լենինականի բաժանմունքի պատ. քարտուղար: Հեղինակ է «Մուտք» (1938), «Կյանքի սերը» (1946), «Անմահության ուղին» (1962) պատմվածքների ժող-ների, «Սիրտ» (1940), «Վահրամ Պահլավունի» (1984) վեպերի, «Հանգիստ խղճով» (1967), «Բուք» (1970) վիպակների և այլ գործերի:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Արամայիս Ազիզբեկի (1931–2006), փիլ.: Փիլ. գիտ. դ-ր (1975), պրոֆ. (1976): Աշխ-ները վերաբերում են հայ ժողղ-ի ինքնության սոցիալ-մշակութ. էթնոհոգեբ. առանձնահատկություններին: Հեղինակ է նաև բուհ. ձեռնարկի:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Արարատ Կարապետի (ծ. 1928), քանդ.: Հեղինակ է կիսանդրիների («Ալեքսանդր Մյասնիկյան», 1966, «Արմենակ Արմենակյան», 2001, ևն), դիմաքանդակների («Հովհաննես Ադամյան», 1979, ևն), դիմաքանդակ-հուշարձանների («Հ. Թումանյան», 1969, ևն), հարթաքանդակների («Մասունցի Դավիթ» էպոսի թեմաներով, 1971, «Մեսրոպ Մաշտոց», 1981, ևն):

ՀՈՎՍԵՓՅԱՆ Արտաշես (Արտուշ) Ավագի (1931–2017), քանդ.: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1989), ՀՀ ժող. նկարիչ (2006): Զաքար *Խաչատրյանի* եղբայրը: Հեղինակ է Ալեքսանդր Թամանյանի (1974, Երևան), Արմեն Տիգրանյանի (1987, Երևան), Օրբելի եղբայրների (1988, Ծաղկաձոր), Նիկողայոս Ադոնցի (1993, Սիսիան) հուշարձանների, Երևանի Սբ Սարգիս եկեղեցու (1975), Երևանի մետրոպոլիտենի «Մասունցի Դավիթ» կայարանի (1981) բարձրաքանդակների, Գաֆեսճյան կենտրոնում՝ «Մասունցի Դավիթ» որմնաքանդակի (2016), ՂԱՊ-ի ազատամարտիկ Բեկոր Աշոտի (Աշոտ Ղուլյան, 1994) և ԼՂՀ ԳԽ 1-ին նախագահ Արթուր Մկրտչյանի (1994, երկուսն էլ՝ Ստեփանակերտ) մահարձանների, Եղիշե Չարենցի (1967), Ջիվանու (2002, Ախալքալաք), Հրանտ Մաթևոսյանի (2013, Երևան) արձանների ևն:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Արտաշես Գրիգորի (1910–1982), ռեժ.: Ադրբ. ԽՍՀ (1940), ՀԽՍՀ (1960), Դաղստանի ԻՀ (1967) արվ. վաստ. գործիչ: Պրոֆ. (1968): 1938–49-ին՝ Բաքվի հայկ. (1928–34-ին՝ ղերասան), 1953–60-ին՝ Լենինականի, 1979–81-ին՝ Ստեփանակերտի թատրոնների գլխ. ռեժ. (Ա. Գուլակյանի «Արշալույսին», Մուրացանի «Ռուզան», Շիրվանզադեի «Պատվի համար», ևն):

ՀՈՎՍԵՓՅԱՆ Բաղիշ Արշակի (1922–2004), գրող, խմբ.: Հեղինակ է «Սերմնացանները չվերադարձան» (1962), «Դու հասկացար ինձ» (1971) վեպերի, «Սևան» (1958) պատմվածքների ժող-ի, «Երբ այս աշխարհը եկա» (1986) վավերագր. երկի, «Հուշեր» (2003) գրքի:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Գարեգին Եղիշեի (1914–1993), գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1975): Հեղինակ է «Ստեփան Զորյանի ստեղծագործությունը» (1951), «Հովհաննես Հովհաննիսյան. կյանքը և գործը» (1957), «Նար-Դոս» (1961), «Չարենցի պոեզիան» (1969) և այլ աշխ-ների:

ՀՈՎՍԵՓՅԱՆ (Հովսեփյանց) Գարեգին Կարապետի, **Գարեգին Ա. Հովսեփյան** (1867–1952), ձեռագրագետ, մատենագետ, պատմաբան, մշակութաբան, խմբ., հրտ., 1943-ից՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս (օծվել է 1945-ին): Փիլ-յան և աստվածաբանության դ-ր (1897): Արք. (1925): 1901–04-ին՝ Երևանի թեմ., 1905–06 և 1915–17-ին՝ Գևորգյան ճեմարանի տեսուչ, 1907–08 և 1918–19-ին՝ Մայր աթոռի «*Արարատ*» ամսագրի խմբ.: 1927–33-ին՝ Ղրիմի և Նոր Նախիջևանի, 1938–43-ին՝ ԱՄՆ-ի հայոց թեմերի առաջնորդ: Հեղինակ է «Մխիթար Մասնեցի», «Խոսրովիկ թարգմանիչ» (երկուսն էլ՝ 1899), «Անրանկարչութեան արուեստը հայոց մէջ» (1902), «Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան եւ կաթողիկոսական ընտրութիւն» (1909), «Հնութեան նշխարներ» (1909), «Խոտակերաց Ս. Նշան, մի նմուշ ԺԳ դարու հայ ոսկերչութեան» (1912), «Գրչութեան արուեստը հին հայոց մէջ», «Զազաւանից ժողովը» (երկուսն էլ՝ 1913), «Թովմա Մեծոփեցու կեանքը» (1914), «Խաղբակեանք կամ Պողոշեանք հայոց պատմութեան մէջ» (հ. 1–3, 1928–43), «Մխիթար Այրիվանեցի», «Մի էջ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութիւնից» (երկուսն էլ՝ 1930), «Լուսաւորչի խաչվառը» (1946), «Մոմիկ նկարիչ եւ քանդակագործ» (1947), «Հեթում Ա-ի նկարազարդ Աւետարանի մնացորդները» (1949) և այլ աշխ-ների: Հավաքել և կազմել է մինչև 1250-ը գրված հայկ. ձեռագրերի 459 հիշատակարան («Յիշատակարանք ձեռագրաց», հ. 1, 1951):

ՀՈՎՍԵՓՅԱՆ Գարուշ Վահանի (ծ. 1932), նկարիչ: 1970-ին (Մինսաս *Ավետիսյանի* հետ) Գյումրիում և Երևանում ստեղծել է որմնանկարներ: Հեղինակ է նաև կոմպոզիցիոն-թեմատիկ գեղանկարների («Բարեկամության կամուրջ», 1978, «Գյումրի», 1979, «Ջերմ հանդիպում», 1980, «Ղարաբաղցիներ», 1998, Մարդու իրավունքների պաշտպ-յանը նվիրված մրցույթի մրց.՝ 1998, ևն):

ՀՈՎՍԵՓՅԱՆ Գուրգեն Սարգիսջանի (ծ. 1940), նյութագիտ-յան և մեքենաշինության բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1996), պրոֆ. (1999): ՌԲՆԳԱ ՀՄ ակադ. (2002): Աշխ-ները վերաբերում են նյութագիտ-յանը, մետաղների ջերմ. մշակմանը, տաքացման սարքավորումներին:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Դավիթ Արամայիսի (1971–1989), բանաստեղծ: Հեղինակ է «Եթե արցունքը խոսել գիտենար» (հրտ.՝ 1991) բանաստեղծությունների, «Տասնութ գարուն» (հրտ.՝ 2006) չափածո և արձակ գործերի ժող-ների: Հ-ին է նվիրված «Ապրողների մեջ փնտրեցեք նրան» (ռեժ.՝ Ջ. Կաժոյան) տեսաֆիլմը: ՌԴ Սբ Գեորգիի 1-ին աստիճանի և «Ոսկե խաչ» շքանշաններ, «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» հուշամեդալ (հետմահու):

ՀՈՎՍԵՓՅԱՆ Էդգար Մովսեսի (1928–2014), նյարդավիրաբույժ: ՀՀ ԳԱԱ և ԵՊԲՀ պատվ. դ-ր (1997): Մովսես *Հովսեփյանի* որդին: 1988-ի Սպիտակի երկրաշարժից հետո ՀԱԵ-ի Հս. Ամերիկայի արլ. թեմի առաջնորդարանի հետ ստանձնել է ՀՀ-ին բժշկ. օգնության համակարգումը: Հ-ի ղեկավարությամբ ստեղծվել է ՀՕՖ-ի բժշկ. հանձնախումբ, որի ծրագրերի շրջանակներում վերապատրաստվել են հայ մասնագետներ:

ՀԱԵ արլ. թեմի առաջնորդարանի «Տարվա հայը» պատվ. տիտղոս (1992), Էլիս կղզու Պատվո շքանշան (1986):

ՀՈՎՍԵՓՅԱՆ Իլյա Հաբեթի (1925–1989), մնասվածքաբան-օրթոպեդ: Բժշկ. գիտ. դ-ր (1970), պրոֆ. (1972): Աշխ-ները վերաբերում են ոսկրային հյուսվածքի վերականգնման հարցերին: ՀԽՍՀ մնասվածքաբանների և օրթոպեդների գիտ. ընկ-յան նախագահ (1976–89):

ՀՈՎՍԵՓՅԱՆ Լիանա Սամվելի (ծ. 1941), լեզվաբան, հայագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1988), պրոֆ. (2006): Հեղինակ է «Սովետահայ լեզվաբանությունը 60 տարում» (1982), «Գրաբարի բառակազմությունը» (1987), «ԺԹ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն» (1997), համահեղ.՝ «Հայոց լեզու: Գրականութ-

յուն: Առարկայական չափորոշիչներ և ծրագրեր» (2006) և այլ աշխ-ների, ուս. ձեռնարկների:

ՀՀ ԳԱԱ գովեստագիր (2011):

ՀՈՎՍԵՓՅԱՆ Հայկ Ալեքսանդրի (1891–1937), ռազմ. գործիչ, 2-րդ կարգի բանակային կոմիսար: ԱՀՊ-ի տարիներին ծառայել է Կովկաս. ռազմաճակատում: 1922-ին՝ Հայկ. հրաձգ. դիվիզիայի կոմիսար և քաղբաժնի պետ: 1925–27-ին՝ Կովկաս. բանակի քաղ. վարչության պետի տեղակալ: 1927-ին ընտրվել է ՀԿ(բ)Կ ԿԿ 1-ին քարտուղար, 1928-ին նշանակվել Մերձվոլգյան ՋՕ քաղ. վարչության պետի տեղակալ, 1927-ից՝ Կարմիր բանակի գլխ. քաղ. վարչության բաժնի պետի տեղակալ: Անդրֆեդերացիայի ԿԳԿ անդամ: Անհիմն բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Հովհաննես Արամի (ծ. 1926), իրավաբան: Իրավաբ. գիտ. դ-ր (1981), պրոֆ. (1988): Աշխ-ները վերաբերում են հայ քաղ. և իրավ. մտքի, Հայաստանի պետության և իրավունքի պատմությանը: Հ. Մոսկվայում լույս տեսած «Քաղաքական և իրավական ուսմունքների պատմություն» (ռուս., 1986–93) քառահատորի «Հայ քաղաքական և իրավական մտքի պատմություն» բաժնի հեղինակն է:

ԽՍՀՄ «Պատվո նշան» (1965), Աշխ. կարմիր դրոշի (1968) շքանշաններ:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Հրանտ Սարգսի (1919–1987), նկարիչ: ՀԽՍՀ վաստ. նկարիչ (1970): Հեղինակ է թեմատիկ կոմպոզիցիաների, դիմանկարների, բնանկարների, նատյուրմորտների («Մեծ տան մայրը», 1959, «Հայրեր և որդիներ», «Սերոբ ամու դիմանկարը», «Աղավաձոր», երեքն էլ՝ 1965, «Հողը և մարդը», 1983, «Կժերով նատյուրմորտ», ևն):

ՀՈՎՍԵՓՅԱՆ Հրանտ Սերգեյի (ծ. 1941), քանդ.: Հեղինակ է հաստոց. և մոնումենտալ-դեկորատիվ քանդակների («Վահան Տերյան», 1980, «Աղասի Խանջյան», 1985, Երևան, դիմաքանդակներ, «Կենաց ծառ», 1996, Ստեփանակերտ, «Երազ», 2001, ք. Չանչուն, Չինաստան, «Քուն», 2002, Երևան, ևն):

ՀՈՎՍԵՓՅԱՆ Հրաչյա Վլադիմիրի (ծ. 1948), գյուղատնտես: Գղտ. գիտ. դ-ր (2003), պրոֆ. (2013): Աշխ-ները վերաբերում են Արարատյան դաշտում կարտոֆիլի 2-րդ բերքի ստացման և Հայաստանի բնակլիմ. պայմաններում առողջ տնկանյութի արտադր-յան կենսատեխնոլոգ. ու ագրոտեխ. հարցերին:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Մանուկ Կարապետի (1918–1984), նկարիչ: ՀԽՍՀ վաստ. նկարիչ (1963): Հեղինակ է հիմնականում հաստոց. գրաֆիկ. գործերի («Բանջարանոց», 1956, «Նորքի ճանապարհը», 1958, «Ալավերդի», 1962, «Երևանը երեկոյան», 1967, ևն):

ՀՈՎՍԵՓՅԱՆ Սառլեն Մկրտչի (1927–2004), ռազմ. տեխնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. թեկնածու, ԽՍՀՄ ՌԾՈՒ 1-ին կարգի կապիտան (1979): 1980–85-ին՝ Երևանի «Աստրո» ԳԱՄ-ի գլխ. ճարտարագետ, տնօրեն: Աշխ-ները վերաբերում են ստորջրյա նավատորմի սպառազինության նոր տեսակների մշակմանն ու ստեղծմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1978):

ՀՈՎՍԵՓՅԱՆ Մովսես Մինասի (1876–1952), բժիշկ, հաս. գործիչ: Էդգար *Հովսեփյանի* հայրը: 1916-ին ամերիկ. Կարմիր խաչի ներկայացուցիչների խմբի հետ եկել է Ռուսաստան, ապա՝ Հայաստան, բուժել տիֆով և խոլերայով հիվանդ հազարավոր մարդկանց, ստացել «փրկիչ» մականունը: 1917-ին մեկնել է Նյու Յորք և բժշկ. գործունեությանը զուգահեռ մասնակցել հայ գաղութի հաս. կյանքին:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Սուշեղ Մայիսի (ծ. 1961), բանասեր, լրագրող: Բանասիր. գիտ. դ-ր (2002), պրոֆ. (2007): Հեղինակ է «Ռադիոշուկայի օրինաչափությունները և զարգացման միտումները Հայաստանի Հանրապետությունում» (2002), «Ռադիոժուռնալիստիկայի հիմունքներ. պատմություն և տեսություն» (2014) աշխ-ների:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Նարեկ Սաշայի (1986–2004), բանաստեղծ: Հեղինակ է մաքսիմնեռի, արձակ բանաստեղծությունների: Հրատարակվել են Հ-ի «Առաքելություն իմաստնության տաճար» (2005), «Նոյյան աղավնու վերադարձը» (2014, Հ-ի գր. դիմանկարը՝ Հասմիկ Գուլակյանի) ժող-ները:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Նինա Հովհաննեսի (1915–1977), դերասանուհի: Ադրբ. ԽՍՀ ժող. արտիստ (1962): 1934-ից՝ Ստեփանակերտի թատրոնի դերասանուհի (Սուսան, Մարգարիտ՝ Շիրվանզադեի «Նամուս», «Պատվի համար», Նատալյա՝ Գ. Սունդուկյանի «Խաթաբալա», Կրուչինինա՝ Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», Էմիլյա՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», ևն):

ՀՈՎՍԵՓՅԱՆ Ռուբեն Գեորգիի (1939–2016), գրող, խմբ., թարգմանիչ: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2014): 1982–87-ին՝ «Սովետական գրող» հրտչ-յան, 1989 և 2006–11-ին՝ *«Նորք»* ամսագրի գլխ. խմբ.: Հեղինակ է «Որոնումներ» (1965), «Երկու վիպակ: Շիչ: Հայոց թաղ» (1970), «Ամենատաք երկիրը» (1977), «Երկար, հրաշալի օր» (1980), «Ճայերը» (1980) պատմվածքների, վիպակների և ակնարկների ժող-ների, «Ծիրանի ծառերի տակ» (2006) վեպի, «Ճնճան» (1972), «Ամենատաք երկիրը» (1983), «Ապրիլ» (1985), «Խնձորի այգին» (1985), «Կարոտ» (1989) կինոսցենարների: Թարգմանել է Գ. Մարկեսի, Լ. Ն. Տոլստոյի և ուր. գործերից:

ՀԳՄ Դ. Դեմիրճյանի անվ. (2006), ՀՀ նախագահի (2007) մրց-ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» (2009) մեդալ:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Սեթ Մինասի (1907–1990), դերասան: ՀԽՍՀ ժող. արտիստ (1978): 1928–35-ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի, Կիրովականի, Դիլիջանի, 1935-ից՝ Ա. Խարազյանի շրջիկ, 1950-ից՝ Արտաշատի թատրոնների դերասան (Գևորգ Մարզպետունի՝ «Գևորգ Մարզպետունի»՝ ըստ Մուրացանի, Պեպո՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», Բարխուդար՝ Շիրվանզադեի «Նամուս», Մարգար՝ Ա. Պապայանի «Աշխարհին, այո՛, շուռ է եկել», ևն):

ՀՈՎՍԵՓՅԱՆ Վաղարշակ Մկրտչի (1912–1998), ճարտարագետ-շինարար: Տեխ. գիտ. թեկնածու (1944), պրոֆ. (1968): ՀՀ բարձրագույն դպրոցի վաստ. գործիչ (1981): Աշխ-ները վերաբերում են բաց հուներում հեղուկի անհավասարաչափ և ճնշում. համակարգերում չկայունացած շարժումներին, ջրամբարների կառուցվածքների մշակման հարցերին:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Վաչե Արտաշեսի (1925–1978), դուդուկահար: ՀԽՍՀ ժող. արտիստ (1977): 1945-ից՝ ՀԽՍՀ հեռուստառադիոյի ժողգործիքների անսամբլի մենակատար: Երկացանկում՝ հայկ. ժող. և աշուղ. մեղեդիներ: Կատարմանը բնորոշ էին ազգ. ոճ. հստակությունը, բարձր վարպետությունը: Հեղինակ է պարեղանակների, երգերի («Վերադարձիր», «Իրիկնաժամին», «Երեքնուկ» ևն):

ՀՈՎՍԵՓՅԱՆ Վարդան Հովսեփի (ծ. 1932), աթլետ, գնդահրորդ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1982), ՀՀ վաստ. մարզիչ (1982): Ուսանող. համաշխ. խաղերի (1954, 1957), ԽՍՀՄ ժողդների սպարտակիադաների (1956, 1959), ԽՍՀՄ (1954–56, 1958, 1959) չեմպիոն: ԽՍՀՄ 8-ակի, ծածկած մարզասրահների՝ Եվրոպայի (1961) ռեկորդակիր: «Սպորտային բացառիկ նվաճումների համար» ԽՍՀՄ Մեծ ոսկե մեդալ (1961):

ՀՈՎՍԵՓՅԱՆ Վիկտոր Հակոբի (1947–1996), բանաստեղծ, մանկավարժ: Հեղինակ է «Թափառող աստղեր» (1978), «Լուսապսակ» (1985), «Հոգետուն» (1990), «Ութ իմաստուններ» (1997) և այլ բանաստեղծությունների ժող-ների, «Կորուսյալ դրախտ կամ Որտեղ է սկսվում Արաքսը» (2013) վեպի:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Վռամ Միքայելի (1925–1991), գրող: Հեղինակ է «Կանաչ մամուռ» (1975), «Տոհմածառ» (1980), «Կանաչ աշխարհ» (1985) և այլ բանաստեղծությունների ժող-ների, «Տեղատարափ» (1984), «Արևածագ» (1987), «Դիմանկար» (1988) պատմվածքների, նորավեպերի, ակնարկների և այլ գործերի:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Տատյանա Լևոնի (ծ. 1926), ակնաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1974), պրոֆ. (1978): Լիա *Օսիպյանի* քույրը: Աշխ-ները վերաբերում են աչքի եղջերաթաղանթի հիվանդությունների և մնասվածքների վիրաբուժ. բուժման, պլաստիկ վիրաբուժության համար անհրաժեշտ աչքի հյուսվածքների պահածոյացման հարցերին: ՀՀ ակնաբույժների ընկ-յան նախագահ (1978–94):

ՀՈՎՍԻՒԱՆ, XIII դ-ի 2-րդ կեսի–XIV դ-ի սկզբի մանրանկարիչ, գրիչ: ***Վասպուրականի մանրանկարչության դպրոցի*** վաղ շրջանի «ժողովրդական ուղղության» ներկայացուցիչ: Նրա ընդօրինակած և պատկերազարդած ձեռագրերից 3 Ավետարան պահվում է Երևանի, 1-ը (1298)՝ ՎԱՆՄՄ մունդ-ներում: Մի շարք մանրանկարներում հետևել է վաղ քրիստ. արվ-ի պատկերագրությանը:

ՀՈՎՎԱՄԱԽԱԶ (Capsella), ***ծտապաշար, ճնճղկահաց, եզան ճակտիկ, ճնճղկաբլիթ***, կաղամբազգիների ընտանիքի միամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 5–7 տեսակ, ՀՀ-ում՝ 1՝ սովոր. Հ.՝ տարածված բոլոր մարզերի ցածրադիր և միջին գոտիներում: Պտուղն արտաքին տեսքով հիշեցնում է պայուսակ (այստեղից՝ անվանումը): Դեղաբույս է. պատրաստուկներն օգտագործում են որպես արյունահոսությունը դադարեցնող, լեղամուղ, արյան ճնշումն իջեցնող միջոց: Ուտելի է, մեղրատու:

ՀՈՎՎԱՇՆԵՐ, ծառայող. շների ցեղերի խումբ: Առավել տարածված են ավստրալ. քոլլի, բորդեր-քոլլի, քոլլի, կովկաս., շվեյցար., պորտուգ., ռում., գերմ., հարավռուս. և այլ ցեղերի Հ., ՀՀ-ում՝ *գամփռը*:

ՀՈՎՎԱՓՈՂ (Alisma), **ջրաջողախոտ**, հովվափողազգիների կարգի բազմամյա խոտաբույսերի ընտանիք: Հայտնի է մոտ 10 տեսակ՝ հիմնականում Հս. կիսագնդի բարեխառն գոտում: Աշկամների և բադերի կեր է, թարմ խոտը թունավոր է:

ՀՈՎՎԵՐԳՈՒԹՅՈՒՆ, իդիլիա, բուկոլիկա (հուն.՝ bukolos – հովիվ), անտիկ պոեզիայի ժանրերից, մեծ մասամբ՝ չափածո, երբեմն՝ արձակ ստեղծագործություն,

որտեղ պատկերվում է բնության մեջ, գյուղում ապրող և աշխատող մարդկանց կյանքը: Հ–յան հիմնադիրը *Թևոկրիտևան* է: Հ–յան պատկերներ կան Ա. Իսահակյանի «Ալագյազի մանիներ» շարքում, Դ. Վարուժանի «Հացին երգը», Վ. Միրաքյանի «Լալվարի որսը» և այլ գործերում:

ՀՈՎՎԻ ԵԿԵՂԵՑԻ, X–XI դդ–ի ճարտ. հուշարձան Անիի հս. արվարձանում՝ Սմբատյան պարիսպներից դուրս՝ Ավագ դռնից 1,5 *կմ* հեռու: 1–ին հարկը ծառայել է որպես դամբարան: Լիովին ավերվել է 1970–ին:

ՀՈՎՏԱՇՈՒՇԱՆ (Convallaria), շուշանազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 1 տեսակ՝ մայիսյան Հ.: Սիակվում է որպես գեղազարդիչ բույս: Դեղաբույս է. պարունակում է ալկալոիդներ, գլիկոզիդներ, սապոնին: Պատրաստուկներն օգտագործում են սրտի սուր և քրոնիկ., լարդի, աչքի և այլ հիվանդությունների ժամանակ, նաև որպես միզամուղ և լեղամուղ: Բույսի բոլոր օրգանները թունավոր են:

ՀՈՎՈՒՆՑ Գագիկ Գեղեոնի (ծ. 1930), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1984): ԵՊԿ պրոֆ. (1990): Հեղինակ է «Խորեոգրաֆիկ պիեսներ» սիմֆ. սյուիտի (1992), ինվենցիոն պիեսների 3 շարքի՝ սիմֆ. նվագախմբի համար, Ջութակի և նվագախմբի կոնցերտի (1980), դաշնամուրի և նվագախմբի կոնցերտների (1986, 1997), լար. կվարտետի (1960), գործիք. սոնատների, պիեսների, դաշնամուր. մանրանվագների, տրիոյի (2007), կինոերաժշտության ևն:

ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1–ին աստիճանի մեդալ (2013):

ՀՈՏԱՆ, գետ Չինաստանի արմ–ում, Թարիմի աջ վտակը: Երկ.՝ 1035 *մ*, ավազանը՝ 43,6 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ մոտ 120 *մ*^{3}*/վ*:


ՀՈՏԱՌՈՒԹՅՈՒՆ, մարդկանց և կենդանիների Հ–յան օրգանների միջոցով շրջակա միջավայրի նյութերի հոտերի ընկալման հատկությունը: Տեղի է ունենում նյութերի (գազ, գոլորշի, փոշի ևն)՝ քթի խոռոչ թափանցելու և համապատասխան ընկալիչների հետ փոխազդեցության միջոցով:

ՀՈՏԱՎԵՏ ՆՅՈՒԹԵՐ, բնորոշ հաճելի հոտով օրգ. միացություններ, որոնք օգտագործվում են օծանելիքի, կոսմետիկ. զանազան նյութերի, օճառի ու սինթետիկ լվացամիջոցների, սննդի և այլ ապրանքների արտադր–յան մեջ: Մոնում են եթերայուղերի, հոտավետ խեժերի, ինչպես նաև բուս. և կենդ. ծագման նյութերից անջատվող օրգ. այլ նյութերի բարդ խառնուրդներում:

ՀՈՏԵՆՈՏՆԵՐ (ինքնանվանումը՝ կոյկոյին, նշանակում է իսկական մարդ), ժողդ Աֆրիկայում: Հիմնականում բողոքական են: XVII–XVIII դդ–ում գաղութարարները նրանց հիմնականում ոչնչացրել են կամ տեղահանել իրենց մշտ. բնակավայրերից:

ՀՈՐԱ (Hora) Յոզեֆ (1891–1945), չեխ գրող, նկարիչ: Չեխոսլովակիայի ժող. նկարիչ (1945, հետմահու): 1920–ական թթ–ի բանաստեղծություններում գերիշխել են սոցիալ. բողոքի թեմաները («Սիրտը և աշխարհի քաոսը», 1922, ժող.), ապա՝ վերաց–փիլ. խորհրդածությունները («Խորտակվող ստվերներ», 1933): Հեղինակ է նաև հայրենասիր. բանաստեղծությունների (1938–45) և այլ գործերի:

ՀՈՐԱՏԱՆԹՔ, ապարի հատվածքում մի քանի *մ*–ից մինչև 9 *կմ* և ավելի խոր–յամբ և, սովորաբար, 75–300 *մմ* տրամագծով հանքափորվածք: Լինում է շահագործման, պայթեցման, ջրաիջեցման, հետախուզ., օժանդակ և այլ ձևերի:



Նավթի և գազի արդյունահանման հորատանցքի կառուցվածքը. 1. ուղղություն, 2. ուղղիչ խողովակասյուն, 3. լվացող հեղուկ, 4. ցեմենտաքար, 5. շահագործման խողովակասյուն, 6. արդյունարար շերտ, 7. հորատված անցքեր, 8. սյունագլուխ, 9. սողնակներ, 10. խաչարդ

ՀՈՐԱՏՄԱՆ ԱՇՏԱՐԱԿ, հորատման համար անհրաժեշտ սարքավորումների իջեցման և բարձրացման նպատակով հորատանցքի վրա տեղակայված (հաճախ՝ մետաղե կառուցվածքի) ամրարձիչ կառույց: Հ. ա–ների համալիրն անվանում են **հորատման տեղակայանք**:

ՀՈՐԱՑԻՈՍ (Քվինտուս Հորացիուս Ֆլակուս, Quintus Horatius Flaccus, մ. թ. ա. 65–8), հռոմեացի բանաստեղծ: Հեղինակ է բանաստեղծությունների (էպոդներ), ներբողների, «Պոեզիայի գիտություն» տրակտատի: Հ–ի ստեղծագործությունը հռոմ. գրկ–յան գլուխգործոցներից է:

ՀՈՐԴ, 1. թուրք. և մոնղ. ժողղ–ների ռազմավարչ. կազմ–յուն, քոչվոր ցեղերի կայան: Միջնադարում՝ ռազմակայան, պետություն կառավարողների մայրաքաղաք: 2. Մարդկանց չկազմակերպված բազմություն:

ՀՈՐԴԱՆԱՆ, գետ Մերձ. Արևելքում: Երկ.՝ 252 *կմ*, ավազանը՝ 18 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 50 *մ*^{3}*/վ*: Սկիզբ է առնում Ձերել *Էշ–Շեյխ* (Հերմոն) լ–ղթայից, հոսում Գիոր տեկտ. իջվածքով, Խուլա և Տիբերիադի լճերի միջով, թափվում Մեռյալ ծովը: Ըստ Ավետարանի՝ Հ–ում է մկրտվել Հիսուս Քրիստոսը:

ՀՈՐԴԱՆԱՆ, **Հորդանանի Հաշիմյան Թագավորություն**, պետություն Մերձ. Արևելքում: Սահմանակից է Սիրիային, Իրաքին, Սաուդյան Արաբիային, Իսրայելին և Պաղեստինի Ինքնավարությանը: Տարածքը՝ 89,3 հզ. *կմ*^{2}, բն.՝ 9,56 մլն (2016): Մայրաքաղաքը՝ Ամման: Պետ. լեզուն՝ արաբ.: Կառավարման ձևը՝ սահմանադրամիապետ.: Պետության գլուխը միապետն (թագավոր) է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը (Պատգամավորների պալատ և Սենատ): Հավատացյալների մեծ մասը սուննի մահմեդական է: Բաժանված է 12 վարչ. մուհաֆազի: Անդամակցում է ՄԱԿ–ին, ԱՊԼ–ին, ԱՀԿ–ին ևն: Տնտ–յունը մեծապես կախված է արտ. ֆին. օգնությունից: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 5,3 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է հագուստ, պոտաշ, ֆոսֆատներ, բանջարեղեն, դեղեր ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, տեքստիլ, նավթ, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ հորդանանյան դինար:

Ժամանակակից Հ–ի տարածքում հնագույն ժամանակներում բնակվել են քանանացիների սեմ. ցեղեր: Մ. թ. ա. I հզ–ամյակում Հ–ի տարածքի մի մասը մտել է Իսրայելի և Հուդայի թագավորությունների մեջ: Մ. թ. ա. I հզ–ամյակի վերջից այստեղ հիմնվել է հին արաբ. Նաբաթեա թագավորությունը, որը մ. թ. II դ–ում նվաճել է Հռոմը: IV դ–ից Հ–ի տարածքը մտել է Բյուզ. կայսրության կազմի մեջ, VII դ–ում նվաճել են արաբները: Տարածվել են արաբ–ն ու մահմեդականությունը: XI–XV դդ–ում Հ–ի տարածքն ասպատակել են խաչակիրները, սելջուկները, մամլուքները: XVI դ–ի սկզբից մինչև 1918–ը եղել է Օսմ. կայսրության կազմում: ԱՀՊ–ի (1914–18) ժամանակ Հ–ի տարածքի մեծ մասը թուրքերից ազատագրել են արաբ. ապստամբ. ջոկատները: Պատերազմից հետո մտել է Պաղեստինի բրիտ. մանդատի մեջ: 1921–ին ստեղծվել է Անդրհորդանանի ամիրությունը (Հորդանան գետից արլ.)՝ Հաշիմյան ամիրա Աբդալլահի գլխավորությամբ, որի մանդատը Մեծ Բրիտանիան ստացել է 1922–ին: ԵՀՊ–ի (1939–45) ժամանակ ամիրության տարածքը եղել է Անգլիայի ռազմ. հենակետերից: 1946–ին Մեծ Բրիտանիան ճանաչել է Հ–ի անկախությունը: Նույն տարում երկիրը կոչվել է Հ., ամիրա Աբդալլահը դարձել է Հ–ի թագավոր: Առաջին արաբա–իսրայել. պատերազմի (1948–49) ժամանակ Հ. իրեն է միացրել Հորդանան գետի արմ. ափը, որը 1967–ի պատերազմի ընթացքում գրավել են Իսրայելի զորքերը: 1988–ին Հ. հրաժարվել է Հորդանան գետի արմ. ափի նկատմամբ հավակնություններից՝ հօգուտ Պաղեստինի ազատագրության կազմ–յան:1991–ից Հ. մասնակցում է մերձավորարլ. կարգավորման բանակցություններին: 1994–ին Իսրայելի հետ կնքել է խաղաղության համաձայնագիր, որով Հ–ին է վերադարձվել 1967–ին Իսրայելի գրաված տարածքների մի մասը: Թագավոր Հուսեին բեն Թալալի՝ հաս. կյանքի ազատականացման և Մերձ. Արևելքում լարվածության թուլացման քաղ. գիծը 1999–ից շարունակում է որդին՝ Աբդալլա II թագավորը:

Հայերը Հ–ում բնակություն են հաստատել վաղ ժամանակներից: Սակայն հայ համայնքը ձևավորվել և ստվարացել է 1915–ի Մեծ եղեռնի ժամանակ, երբ բազմաթիվ գաղթականներ ապաստան են գտել Հ–ում: 1948–ին Հ–ում հայերի թիվը շուրջ 6000 էր, 1980–ին՝ 3000, ներկայում՝ 5 հզ., հիմնականում՝ Ամմանում, Իրբիդում, Էր Ռուսեյֆայում: Գործում են կրթամշակութ. և բարեգործ. կազմ–յուններ, երիտասարդ. ակումբներ, 2 առաքել. և 1 կաթոլիկ եկեղեցիներ:

ՀՈՐԴԱՆԱՆՅԻՆԵՐ, **Հորդանանի արաբներ,** ժողղ, Հորդանանի բնիկ բնակչությունը: Ընդհ. թիվը՝ շուրջ 2,350 մլն (2012): Ապրում են նաև Քուվեյթում (350 հզ.) և արաբ. այլ երկրներում: Լեզուն՝ արաբ.: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են, կան նաև քրիստոնյաներ:

ՀՈՐԹԱԼԵՋՈՒ, գաղտրիկազգիների ընտանիքի երկամյա կամ բազմամյա փշոտ բույս: Մոլախոտ է: Տարածված է Միջերկրածովայքում, Ասիայում, ՌԴ–ում, Միջին Ասիայում, ՀՀ–ում՝ ամենուր:

ՀՈՐԹԻ (Horthy) Միկլոշ (1868–1957), 1920–44–ին՝ Հունգարիայի բռնապետ, փոխծովակալ (1918): Մասնակցել է 1918–ի Կոտորի ապստամբության ճնշմանը, Հունգարիայի Խորհրդ. Հանրապետության (1919) տապալմանը: Հ–ի նախագահությամբ՝ 1941–ին Հունգարիան ներքաշվել է ԵՀՊ–ի մեջ: 1944–ի հոկտ–ին իշխանությունը հանձնել է Ֆ. *Սալաշիին* և մեկնել արտերկիր:

ՀՈՐԻԶՈՆ, երկրի մակերևույթի աչքով տեսանելի մասը: Տեսանելի Հ. է կոչվում այն

գիծը, որով երկինքը թվում է սահմանակցված երկրի մակերևույթի հետ:

«ՀՈՐԻԶՈՆ», գր. տարեգիրք (1894–ին, Թիֆլիս՝ 1 գիրք): Հրտ.՝ Փիլիպոս Վարդազարյան:

«ՀՈՐԻԶՈՆ», հաս–քաղ., տնտ., գր. օրաթերթ (1909–18, Թիֆլիս): Խմբ–հրտ–ներ՝ Բ. Նուրալյան, Ս. Սահակյան, փաստացի խմբ–ներ՝ Լեո, Հովհաննես Թումանյան, Նիկոլ Աղբալյան, Արշակ Զամալյան, Սիմոն Վրացյան, Միքայել Վարանդյան, Վահան Նավասարդյան: 1914–15–ին լույս է տեսել նույնանուն գր–գեղ. հավելված:

«ՀՈՐԻԶՈՆ», հաս–քաղ., մշակութ. շաբաթաթերթ (1979–ից, Մոնրեալ՝ անգլ. և ֆրանս.): ՀՅԴ Կանադայի շրջանի պաշտոնաթերթ: Խմբ–ներ՝ Կիրո Մանոյան, Վահագն Գարագաշյան (1997–ից): 2001–ից լույս է ընծայում պատկերազարդ տարեգիրք: Զբաղվում է նաև գրահրտչ. գործունեությամբ:

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԿՈՕՐԴԻՆԱՏՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ, *երկնային կոորդինատների* համակարգ, որի հիմն. հարթությունը *մաթեմատիկական հորիզոնն* է, բևեռները՝ զենիթը և նադիրը: Կիրառվում են աստղերի և Արեգակն. համակարգի մարմինների շարժումները տեղում դիտելիս: Երկնոլորտի օրական պտույտի պատճառով հորիզոն. կոորդինատները ոչ միայն մոլորակների և Արեգակի, այլև աստղերի համար օրվա ընթացքում անընդհատ փոխվում են:

ՀՈՐՄՈՆՆԵՐ (հուն.՝ hormao – շարժել, դրդել), կենսաբանորեն ակտիվ նյութեր, որոնք արտազատվում են ներզատիչ գեղձերից և նպատակաուղղված ազդեցություն ունենում այլ օրգանների ու հյուսվածքների վրա: Մարդիկ և ողնաշարավոր կենդանիներն ունեն այդպիսի գեղձերի զարգացած համակարգ (հիպոֆիզ, մակերիկամ, սեռ. գեղձեր, վահանագեղձ ևն), որոնք արյան մեջ թափանցող Հ–ի միջոցով մասնակցում են բոլոր կարևոր կենսընթացներին (աճ, զարգացում, բազմացում, նյութափոխանակություն): Զարգացած ներզատիչ գեղձեր ունեն նաև բարձրակարգ օրգանիզմները, անողնաշարներից՝ գլխոտանի փափկամարմինները, միջատները, խեցգետնակերպները: Բժշկության մեջ օգտագործվող Հ. սինթեզում կամ անջատում են կենդանիների համապատասխան օրգաններից: Բույսերի Հ–ի մասին տես *Բուսահորմոններ* հոդվածում:

ՀՈՐՈՆՏԱԼՈ, ժողղ Ինդոնեզիայի Սուլավեսի կղզու համանուն պրովինցիայում և Մինահասա թ–կղզում: Ընդհ. թիվը՝ 900 հզ. (2014): Լեզուն՝ հորոնտալո: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են:

ՀՈՐՈՍԿՈՊ (հուն.՝ horoskopos – բառացի՝ ժամանակին հետևող), աստղագուշակության մեջ օգտագործվող, պայմանականորեն պատկերված երկնքի աղյուսակքարտեզ, որը ցույց է տալիս մոլորակների, *Կենդանակերպի* նշանների և որոշ կարևոր այլ կետերի փոխադարձ դասավորությունը ժամանակի որոշակի պահին:

ՀՈՐՈՎԵԼ, հոռովել, գութաններգ, հայ գյուղացու հողագործ. աշխ–ի ավանդ. երգը (նաև հիմն. երգատեսակը), որը հնչել է գութանով վար անելիս, բանող անասուններին խթանելու, հոտաղներին ոգևորելու, աշխատանքը թեթևացնելու նպատակով: Արտահայտել է նաև գյուղացու սոցիալ. բողոքը, անձն. հույզերն ու ապրումները: Անվանումը՝ «առավել» (2 արտերի չհերկվող սահմանագիծը) բառից, որին գութանավորը միացրել է «հո» բացականչությունը: Տես նաև *Կալերգ*:

ՀՈՐՈՎԻՑ (Horowitz) Վլադիմիր (Սամոյլովիչ, 1903–1989), ամերիկացի հրեա դաշնակահար (ծնվել է Ռուսաստանում): XX դ–ի ամենախոշոր դաշնակահարներից, ռոմանտիկ ոճի ներկայացուցիչ: Նվագացանկում՝ Ֆ. Լիստի, Ֆ. Շոպենի, նաև ռուս կոմպոզիտորների և ուր. գործերից: Հեղինակ է դաշնամուր. փոխադրումների:

ՀՈՐՎԻՑ Ռոբերտ (ծ. 1947), ամերիկացի կենսաբան, Մասսաչուսեթսի տեխնոլոգ. համալսարանի պրոֆ.: Հիմն. գիտ. ներդրումը վերաբերում է Caenorhabohtis elegans նեմատոդ – որդի ուսումնասիրությանը: Բացահայտել է ապոպտոզի գեն – կարգավորիչները:

Նոբելյան մրց. (2002, Ս. *Բրենների* և Զ. *Սալսթոնի* հետ):

ՀՈՐՔՀԱՅՄԵՐ (Horkheimer) Մաքս (1895–1973), գերմանացի փիլ. և սոցիոլոգ, ֆրանկֆուրտյան դպրոցի հիմնադիր: 1930–56–ին՝ Մայնի Ֆրանկֆուրտի սոցիալ. հետազոտությունների ինստ–ի տնօրեն, 1951–53–ին՝ համալսարանի ռեկտոր: Հեղինակ է «Ավանդական և քննադատական տեսություն» (1937), «Արշալույս և անկում», 1978 և այլ աշխ–ների:

ՀՈՈՒԵԼՍ (Howells) Ուիլյամ Դին (1837–1920), ամերիկացի գրող, քննադատ: Հեղինակ է «Ժամանակակից պատմություն» (1882), «Սայլաս Լաֆեմի վեհացումը» (1885) սոցիալ–հոգեբ. վեպերի, «Հյուրը Ալտրուրիից» (1894), «Ասեղի անցքի միջով» (1907) ուտոպիական երկերգության: Գրել է Լ. Ն. Տոլստոյի ազդեցությունը (1880–ականն թթ–ի 2–րդ կես) և կարեկցությամբ վերաբերվել աշխատավոր չքավորներին («Գթասրտություն», 1892):

ՀՈՈՒԿ (Hawke) Ռոբերտ Ջեյմս Լի (ծ. 1929), Ավստրալիայի վարչապետ և լեյբորիստ. կուս–յան առաջնորդ՝ 1983–91–ին: 1973–1978–ին՝ կուս–յան նախագահ:

ՀՈՓԵՐ (Hopper) Դենիս (1936–2010), ամերիկացի կինոդերասան, ռեժ.: Նկարահանվել է իր՝ «Անհոգ հեծյալը» (1969, Կանի կփ մրց.), «Վերջին կինո» (1971), նաև ամերիկացի և եվրոպացի առաջատար ռեժ–ների ֆիլմերում («Ամերիկացի ընկերը», «Կապույտ թավիշ», «Իսկական սեր», «Ապոկալիպսիսն այսօր» ևն):

ՀՈՓԵՐ Էդվարդ (1882–1967), ամերիկացի գեղանկարիչ: Ստեղծել է միայնության և օտարացման թեմաներով տեսարաններ, համարձակ ռակուրսներով բնանկարներ («Տունը երկաթգծի մոտ», 1925, ևն) և ինտերիերներ («Գրասենյակ փոքր քաղաքում», 1953, ևն):

ՀՈՓԵՐ (անգլ.՝ hopper), բունկերի՝ ձագարի տեսքի թափքով ինքնաբեռնաթափվող երկթող. վագոն՝ ածուխ, հանքաքար և սորուն բեռներ փոխադրելու համար:

ՀՈՓՔԻՆՍ (Hopkins) Գարրի Լլոյդ (1890–1946), ԱՄՆ նախագահ Ֆ. *Ռուզվելտի* խորհրդականը և հատուկ օգնականը ԵՀՊ–ի տարիներին: 1938–40–ին՝ առևտրի նախարար:

ՀՈՓՔԻՆՍ Էնթոնի (ծ. 1937), բրիտանացի դերասան: Խաղացել է Լոնդոնի Ազգ. թատրոնում: Նկարահանվել է «Օդրի Ռոզ», «Մոգություն», «Մարդ–փիղը», «Չերինգ կրոս–ռոուդ–84», «Բառնստի», «Բեկում», «Մարդ–գայլը», «Գառների լռությունը» և այլ ֆիլմերում:

ՀՈՓՔԻՆՍ Ջերարդ Մենլի (1844–1889), անգլիացի բանաստեղծ, կաթոլիկ քհն.: Հ–ի փիլ. քնարերգությունն աչքի է ընկնում հնչյուն., շարահյուս. և ռիթմ–տաղաչափ. կառուցվածքով: Հ–ի երկերն առաջին անգամ հրատարակվել են 1918–ին:

ՀՈՓՔԻՆՍ Ֆրեդերիկ Գոուլենդ (1861–1947), անգլիացի կենսաքիմիկոս, գիտ. դպրոցի հիմնադիր: Լոնդոնի թագավոր. ընկ–յան անդամ (1905) և նախագահ (1930–35), ԽՍՀՄ ԳԱ արտ. պատվ. անդամ (1934): Հայտնաբերել է A և D վիտամինները, գլուտաթիոնը: Բացահայտել է կաթնաթթվի կուտակման երևույթն աշխատող մկաններում: Նոբելյան մրց. (1929):

ՀՈՔԵԹ (Hockett) Չառլզ (1916–2000), ամերիկացի լեզվաբան, մարդաբան: Ժամանակակից ձևաբանության հիմնադիրներից: Պաշտպանել է լեզվաբ–յան և մարդաբանության միասնությունը: Հեղինակ է ընդհ. հնչյունաբանությանը, լեզվաբ. նկարագրության մեթոդիկային վերաբերող աշխ–ների:

ՀՈՔՆԻ (Hockney) Դեվիդ (ծ. 1937), անգլիացի գեղանկարիչ, գրաֆիկ, լուսանկարիչ, բեմանկարիչ: Հարել է փոփ–արտ հոսանքին: Հեղինակ է օրգ. և երկրչփ. ձևերի հակադրությամբ հարթ կոմպոզիցիաների («Մեծ ճոռփյուն», 1967), XX դ–ի սկզբի ավանգարդիզմի և պարզունակ արվ–ի ազդեցությամբ դիմանկարների, բնանկարների («Մեծ ալոճենի», 2008, ևն), գրաֆիկ. պատկերազարդումների (Կ. Կավաֆիսի երկերի, 1967, ևն):

ՀՈՖԹ (Hooft) Պիտեր Կոռնելիս (1581–1647), նիդեռլանդացի գրող: Հեղինակ է «Գրանիդա» (1605) հովվերգության, «Հերարդ վան Վելզեն» (1613) հերոս. ողբերգության, կենցաղ. թեմայով «Հիմարը» (1616) կատակերգության, մարդասիր. բանաստեղծությունների, պատմ. արձակ գործերի («Նիդեռլանդական պատմություններ», գիրք 1–20, 1642):

ՀՈՖՄԱՅՍՏԵՐ (Hofmeister) Վիլհելմ (1824–1877), գերմանացի բուսաբան: Բույսերի սաղմնաբանության հիմնադիրներից: Ապացուցել է սպորավոր և սերմնավոր բույսերի զարգացման ցիկլի միասնությունը (1851), բացահայտել մամուռների, գետնամուշկների, ձիաձետների, պտերների և մերկասերմերի սերունդների հաջորդականությունը:

ՀՈՖՄԱՆ (Hofmann) Ավգուստ Վիլհելմ (1818–1892), գերմանացի քիմիկոս–օրգանիկ: Սինթետիկ ներկանյութերի արտադր–յան հիմնադիրներից: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1857): Հայտնագործել է ալիֆատիկ ամինների սինթեզը՝ ամոնիակի և ալկիլող ռեագենտների փոխազդեցությամբ (1850), առաջնային ամինների փոխարկումը իզոնիտրիլների (1868) ևն, որոնք հայտնի են որպես Հոֆմանի ռեակցիաներ:

ՀՈՖՄԱՆ (Hoffman) Դասթին (ծ. 1937), թատրոնի և կինոյի ամերիկացի դերասան: Դերակատարումներում միահյուսել է դրամատիզմն ու էքսցենտրիկը, կենս. համոզչությունն ու տպավորչականությունը: Նկարահանվել է «Շրջանավարտը», «Կեսգիշերային կովբոյ», «Ծղոտե շներ», «Նախագահական թիկնազորը», «Թութսի», «Կրամերն ընդդեմ Կրամերի», «Անձրևի մարդը», «Խելագար քաղաքը», «Պարֆյումեր: Մի մարդասպանի պատմություն», «Քառյակ» և այլ ֆիլմերում:

«Օսկար» (1980, 1989), «Ոսկե գլոբուս» (6 անգամ), «Ոսկե արջ» (1989), «Սեզար» (2009) մրց-ներ:

ՀՈՖՄԱՆ (Hofmann) Եժի (ծ. 1932), լեհ ռեժ., սցենարիստ: Նկարահանել է «Գանգստեր-ներ և ֆիլանտրոպներ» (1963) երգիծ. կատակերգությունը, էկրանավորել է գր. ստեղծագործություններ՝ «Պան Վոլոդիևսկի» (1969), «Ջրհեղեղ» (1974), «Հրով և սրով» (1999), «Հին հեքիաթ: Երբ արեգակը եղել է աստված» (2003), «Վարշավյան ճակատամարտ. 1920» (2011) ևն:

ՀՈՖՄԱՆ Էռնստ Թեոդոր Ամադեուս (1776–1822), գերմանացի գրող, կոմպոզիտոր, երաժշտ. քննադատ, դիրիժոր, նկարիչ: Ռոմանտիկ. երաժշտ. գեղագիտյան և քննադատության հիմնադիրներից: Հեղինակ է «Ասպետ Գլյուկը» (1809), «Յոհան Կրայսլեր. խմբավարի երաժշտական տառապանքները» (1800), «Դոն Ժուան» (1813) նովելների, «Ոսկե կճուճ» (1814), «Ավազե մարդը» (1817), «Ձիննոբեր մականունով փոքրիկ Ցախեսը» (1819) վիպակ-հեքիաթների, «Սատանայի էլիքսիրը» (1815–16), երգիծ. «Մուրր Կատվի կենցաղավարության տեսակետները» (1819–21) վեպերի, «Թատրոնի մի տնօրենի զարմանալի տառապանքները» (1819), «Գիշերային պատմվածքներ» (մաս 1–2, 1817), «Սերապիոն եղբայրներ» (հ. 1–4, 1819–21), «Լվերի տիրակալը» (1822) և այլ գործերի: Հայ. հրատարակվել են «Թուղթ խաղացողի բախտը» (1882), «Ձինվոր Հակոբ» (1897) գործերը: «Մարդույկ-Ջարդուկը և մկների թագավորը» (1988) հեքիաթ-վիպակը: Հ. «Ունդինա» (1814) առաջին ռոմանտիկ. օպերաներից մեկի հեղինակն է: Նրա բանաստեղծ. կերպարներն իրենց գործերում օգտագործել են Ռ. Շումանը, Պ. Ի. Չայկովսկին, Պ. Հինդեմիտը և ուր.:

ՀՈՖՄԱՆ Էրիխ (1868–1959), գերմանացի մաշկավեներաբան: Ֆ. *Շաուդինի* հետ հայտնաբերել է (1905) սիֆիլիսի հարուցիչը: Աշխ-ները վերաբերում են վեներ. հիվանդությունների ախտորոշմանն ու բուժմանը:

ՀՈՖՄԱՆ (Hoffman) Ժյուլ Ալֆոնս (ծ. 1941), ֆրանսիացի իմունաբան և բջջաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1969): ՌԳԱ արտ. անդամ (2006): Բացահայտել է դենդրիտային բջիջներն ու նրանց դերը հարմարվող. իմունիտետում:

Նոբելյան մրց. (2011, Բ. *Բյոթլերի* և Ռ. *Շտեյնմանի* հետ):

ՀՈՖՄԱՆ (Hoffmann) Կուրտ (1910–2001), գերմանացի կինոռեժ.: Նկարահանել է ֆաշիզմը մերկացնող երգիծ. երաժշտ. («Մենք հրաշամանուկներ ենք», 1958, «Ուրվականները շպեսարտ դղյակում», 1960, նաև «Արկածախնդիր Ֆելիքս Կրալի խոստովանությունը», 1957, «Պարոն Միսսիսիպիի ամուսնությունը», 1960, ըստ Ֆ. Դյուրենմաթի, «Կապիտան», 1971) ֆիլմերը: Է. Լյուբիչի անվ. մրց. (1958):

ՀՈՖՄԱՆ Ռոալդ (ծ. 1937), ամերիկացի ֆիզքիմիկոս: ՌԳԱ արտ. անդամ (1988–ից): Ձևակերպել է (1965, Ռ. Վուդվորդի հետ) քիմ. ռեակցիաների ժամանակ օրբիտալային համաչափության պահպանման սկզբունքը (Վուդվորդ–Հոֆմանի կանոն): Ստեղծել է քիմ. ռեակցիաների ընթացքում ատոմների և մոլ-ների բախումների քվանտ. տեսությունը:

Նոբելյան մրց. (1981, Կ. *Ֆուկուիի* հետ):

ՀՈՖՄԱՆ (Hofman) Ֆրից (1871–1927), գերմանացի մարմնամարզիկ-թեթև աթլետ: 1896-ի օլիմպ. խաղերի կրկնակի չեմպիոն և մրցանակակիր:

ՀՈՖՄԱՆ Ֆրից (1866–1956), գերմանացի քիմիկոս-տեխնոլոգ: Աշխ-ները վերաբերում են սինթետիկ կաուչուկի քիմիային: Աշխատակիցների հետ ստացել է (1909) մեթիլկաուչուկ՝ երկմեթիլբուտադիենի պոլիմերը, Լիվերկուզենում կազմակերպել է (1916) դրա արտադր-յան գործարան:

ՀՈՖՄԱՆ ՖՈՆ ՖԱԼԼԵՐՍԼԵԲԵՆ (Hoffmann von Fallersleben) Ավգուստ Հենրիխ (1798–1874), գերմանացի բանաստեղծ և բանասեր: Ուսումնասիրել է գերմ. ժող. երգերի պատմությունը: «Գերմանիա, Գերմանիան ամեն ինչից վեր է» (1841) հայրենասիր. երգը դարձել է Գերմանիայի օրհներգը:

ՀՈՖՍԹԵԴՏԵՐ, **Հոֆսթադեր** (Hofstadter), Ռոբերտ (1915–1990), ամերիկացի ֆիզիկոս-փորձարար: Ստեղծել է ռենտգեն. և գամմա-քվանտների, նեյտրոնների հաշվիչներ, հետազոտել բարձր էներգիաների էլեկտրոնների ցրումն ատոմ. միջուկներից, որը հանգեցրել է *նուկլոնների* կառուցվածքի բացահայտմանը: Նոբելյան մրց. (1961):

ՀՊԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ, մարդու (ֆիզ. անձի)՝ միապետ. վարչակարգով որևէ պետության հետ միակողմանի քաղ-իրավական կապ: Արտահայտվում է որոշակի իրավունքներով ու պարտականություններով:

ՀՊՈՒՄԱՅԻՆ ՌԵԼՍ, էլ. շարժակազմի հոսանքընդունիչի հետ սահահպման կոշտ հաղորդիչ: Տեղակայվում է երկթղ., ռելսի կողքին: Օգտագործվում է հիմնականում մետրոպոլիտենում:

ՀՌԱԴԱՄԻԶԴ, դրածո թագավոր Հայաստանում՝ 51–53-ին: Իրերիայի Փարսման թագավորի որդին: Գահակալել է Հռոմի և իրեր. ուժերի օգնությամբ: Անկարող լինելով դիմադրել Հայոց թագավոր *Տրդատ Ա*-ին՝ 52-ին փախել է Իրերիա: 53-ի ձմռանը ներխուժել է Հայաստան, սակայն պարտություն է կրել:

ՀՌԱՆԴԵԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 64, կնքել են Հայոց թագավոր *Տրդատ Ա*-ն և հռոմեացի զորավար Դոմետրոս *Կորբուլոնը* Անձիտ գվթ-ի Հռանդեա վայրում՝ մի կողմից՝ Հայաստանի ու Պարթևստանի, մյուս կողմից՝ Հռոմի միջև տասնամյա (54–64) պատերազմի ժամանակ հռոմեացի զորավար *Պետոսի* պարտությունից հետո: Հ. պ-ով Հռոմը Տրդատ Ա-ին ճանաչել է Հայոց թագավոր, վերականգնվել են Մեծ Հայքի սահմաններն ու ինքնուրույնությունը, հռոմ. և պարթև. զորքերը դուրս են բերվել Հայաստանից:

ՀՌԵԱ ՍԻԼՎԻԱ, *Հռոմուլոս* և *Հռեմոս* երկվորյակ եղբայրների մայրը. ավանդության համաձայն՝ եղել է լատինների Ալբա Լոնգա թագավորի դուստրը:

ՀՌԵՄՈՍ (Remus), Հռոմի 1-ին թագավոր *Հռոմուլոսի* երկվորյակ եղբայրը, *Հռեա Սիլվիայի* որդին: Եղբոր հետ հիմնադրել է Հռոմը:

ՀՌԵՆՈՍ (գերմ.՝ Rhein), գետ Արմ. Եվրոպայում: Երկ.՝1320 *կմ*, ավազանը՝ 224,4 հզ. *կմ*^{2} (առանց Մասայի ավազանի), ջրի միջին ծախսը՝ 2500 *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Ալպ. լ-ներից: Վերին հոսանքում, առաջացնելով սահանքներ ու ջրվեժներ, Հ. կտրում է Ալպերի, Յուրայի և Շվարցվալդի լ-ճայուղերը, անցնում Բոդենի լճով, ապա Բազել ք-ից ներքև դուրս գալիս Վերինհոենոս. դաշտավայր, այնուհետև անցնում նեղ հովտով, հատում Հռենոսյան թերթաքարային լեռները, հոսում Միջինեվրոպ. դաշտավայրով և, առաջացնելով դելտա, թափվում Հս. ծովը: Գլխ. վտակները՝ Ահրե, Մոզել, Մասա, Նեկար, Մայն, Ռուր: Նավարկելի է 952 *կմ:* Ձրանցքներով կապված է Դանուբ, Ռոն, Վեզեր, Էլբա, Էմս գետերի հետ: Գործում են բազմաթիվ ջրէկներ: Արմ. Եվրոպայի կարևոր չսառչող տրանսպորտ. մայրուղին է (օրական՝ 650–700 նավ): Գլխ. նվ-ներ՝ Բազել, Դույսբուրգ, Մանհայմ, Լյուդվիգսհաֆեն, Ռոտերդամ: Հ-ի ափերին է նաև Բոննը՝ նախկին ԳԴՀ-ի մայրաքաղաքը:

ՀՌԵՆՈՍՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ 1806–13, գերմ. 36 պետությունների միավորումը Նապոլեոն I-ի հովանավորության ներքո:

ՀՌԵՍՏՐՈՒԹՅՈՒՆ, *ճարտասանություն*, 1. գիտ-յուն հռետոր. արվ-ի և առհասարակ գեղ. արձակի, ազդեցիկ խոսքի մասին: Ծագել է Հին Հունաստանում մ. թ. ա. V դ-ում, համակարգի վերածվել III–II դդ-ում, Հռոմում՝ մ. թ. ա. I դ-ում: Աշակվել է անտիկ շրջանում (Ցիցերոն, Քվինտիլիանոս), զարգացել միջին դարերում և նոր ժամանակներում: XIX դ-ում սերտաճել է բանաստեղծականության հետ և դարձել գրկ-յան տեսության մաս՝ ոճաբանություն անունով: Հայաստան է մուտք գործել մ. թ. ա. I դ-ում (Տիգրան Բ Մեծ, Արտավազդ Բ), մեծ նշանակություն է ստացել V դ-ում (Մեսրոպ Մաշտոց, Մովսես Խորենացի, Եղիշե, Եզնիկ Կողբացի): Հռետոր. արվ-ի տեսությունը Հայաստանում սկզբնավորվել է թարգմ-ների միջոցով (Թեոն, «Յաղագս ճարտասանական կրթութեանց», թարգմ.՝ VI դ.): Ուշագրավ է Հովհան Մայրավանեցու «Խրատ վարուց» (հրտ.՝ 1836) ճառերի ժող-ը: Հռետոր. ոճն զգալի է նաև Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» (հրտ.՝ 1701–02) պոեմում: Հ. դասավանդվել է Գլաձորի և Տաթևի համալսարաններում (Եսայի Նչեցի, Գրիգոր Տաթևացի, Հովհան Որոտնեցի): Հ-ի զարգացմանը նպաստել են Մխիթարյան միաբանները՝ թարգմանելով Ցիցերոնի ճառերը: Ճանաչված հռետոր է եղել նաև *Պարույր Հայկազնը*, որի արձանը, «Աշխարհի թագուհի Հռոմը՝ ճարտարախոսության թագավորին» մակագրությամբ, կենդանության օրոք կանգնեցվել է Հռոմի հրապարակներից մեկում: Հայտնի է ֆրանս. դատ. Հ-յան դպրոցը: Հ. բազմասեռ է՝ քաղ., դատ., ակադ. ևն: 2. (Երաժշտ.) երաժշտատես. ուսմունք, որը երաժշտությունը դիտում է իբրև ճարտասանության և բանաստեղծ. խոսքի ուղղակի համադրում: Տեսականորեն իմաստավորվել է բարոկկոյի դարաշրջանում Գերմանիայում՝ Յ. Բուրմայստերի, Կ. Բեռնհարդի, Յ. Գ. Վալտերի և ուր. աշխ-ներում: Ընդգրկում է նույն մասերը, ինչ գր. Հ., որոնք, պայմանավորված բովանդակությամբ, զուգորդվել են յուրահատուկ երաժշտ. հնարքներով:

ՀՌԻՓՍԻՄԵ (ծ. թ. անհտ–301), քրիստոնյա նահատակ կույս, սուրբ: Ըստ ավանդության՝ 37 քրիստոնյա աղնվազարմ կանայք, Հ-ի գլխավորությամբ, խուսափելով Հռոմի *Դիոկղետիանոս* կայսեր հալածանքներից, փախել են Մեծ Հայք և զբաղվելքրիստ. քարոզչությամբ: Վաղարշապատում սրատվել են Հայոց թագավոր *Տրդատ Գ Մեծի* հրամանով: Դեպքից 9 օր անց վիրապից ազատված Գրիգոր Ա Լուսավորիչը, թաղելով Հ-ին և

մյուս նահատակներին, Վաղարշապատի հս–արլ. կողմում կառուցել է Հռիփսիմյանց վկայարանը կամ հանգստարանը, որի շինաքարերը «մեղքերը քավող» Տրդատը բերել է Մասիս սարից: Գրիգոր Լուսավորիչը Հ–ին և մյուս նահատակներին սրբադասել է, իսկ նրանց հիշատակի օրը ներառել եկեղեցու տոնացույցում:

ՀՌԻՓՍԻՄԵԻ ԵԿԵՂԵՑԻ, **Սուրբ Հռիփսիմե եկեղեցի**, ճարտ. հուշարձան Էջմիածնում: Հիմնադրել է ***Կոմիտաս Ա. Աղցեցին*** (618), ըստ ավանդության՝ ***Հռիփսիմյան կույսերի*** նահատակության տեղում: Ներքուստ խաչաձև է, արտաքուստ՝ պարփակված ուղղանկյուն ծավալի մեջ՝ անկյունային 4 սենյակներով: Իր տիպի կառույցներից առանձնանում է լայնանիստ (10,1 *մ*) ոչ բարձր, գմբեթային քառանկյան անկյուններում թմբուկին կցված փոքր աշտարակներով:

ՀՌԻՓՍԻՄՅԱՆ ԻԳԱԿԱՆ ԳԻՄՆԱԶԻԱ, հիմնադրվել է 1850–ին Երևանում: Սկզբում՝ Հռիփսիմյան օրիորդաց վարժարան, 1884–ին՝ օրիորդաց պրոգիմնազիա, 1898–ին՝ գիմնազիա: Գործել է պետ. ծրագրով, ուսուցումը՝ ռուս.: 1918–ին ազգայնացվել է, 1921–ից վերակառուցվել է 2–րդ աստիճանի երկսեռ դպրոցի:

ՀՌԻՓՍԻՄՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ, հիմնադրվել է 1838–ին Զմյուռնիայում: Մինչև 1849–ը՝ Սարգսյան, ապա՝ բարերարի անունով: Ուսուցումը յոթնամյա ծրագրով էր: Ունեցել է մանկապարտեզ, գիշերօթիկ որբանոց: Փակվել է 1922–ին:

ՀՌԻՓՍԻՄՅԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑ, 1. **Գանձակի**, երկդասյան ուս. հաստատություն, հիմնադրվել է 1874–ին: Ունեցել է կրտսեր և ավագ նախակրթարաններ: Նախապես գործել է Սբ Հովհաննես եկեղեցու գավթում, ապա՝ վարձու տներում: Ցար. իշխանությունը դպրոցը մի քանի անգամ փակել է: 1910–ական թթ–ի վերջերին դարձել է երկսեռ դպրոց:

2. **Նոր Նախիջևանի**, երկդասյան ուս. հաստատություն, հիմնադրվել է 1881–ին: Գործել է Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գավթում, ապա՝ վարձու տներում: 1887–ին դպրոցի համար շենք է կառուցվել: 1920–ին վերածվել է երկսեռ դպրոցի:

3. **Նոր Բայազետի**, հիմնադրել է Բարսեղ *Արծրունին* 1867–ին՝ իր իսկ հիմնադրած արական դպրոցին (1852) կից: Նախապես եղել է մեկդասյան, 1887–88 ուս. տարվանից՝ երկդասյան: 1880–ից՝ Հռիփսիմյան: 1896–ին փակվել է, վերաբացվել 1905–ին, 1918–ին վերածվել է երկսեռ դպրոցի:

4. **Բաքվի**, հիմնադրվել է 1866–ին, կոչվել է Սբ Գրիգոր Լուսավորչի անունով: Սկզբնապես եղել է տարր. ուս. հաստատություն, 1873–ից՝ Հռիփսիմյան: 1909–ից՝ միջնակարգ, 1922–ից՝ երկսեռ դպրոց:

5. **Վաղարշապատի**, հիմնադրվել է 1872–ին: Սկզբում եղել է մեկդասյան, ապա՝ երկդասյան: Ցար. կառ–յունը մի քանի անգամ փակել է: Գործել է մինչև 1918–ը:

ՀՌՈԴՈՍ, կղզի Միջերկր. ծովի արլ–ում՝ Հվ. Սպորադներ կղզեխմբում (Հունաստան): Տարածքը՝ 1404 *կմ*^{2}, բն.՝ 115,5 հզ. (2010): Բարձր.՝ մինչև 1215 *մ* (Աթավիրոս լ.): Բնակիչներն զբաղվում են այգեգործությամբ, ցիտրուս. բույսերի և ձիթենու մշակությամբ, ձկան և սպունգի որսով: Առողջավայր է: Հ. եղել է Էգեյան մշակույթի կենտրոններից:

ՀՌՈՄ (Roma), 1. **Հին**, ք. Ապենինյան թ–կղզում, հետագայում՝ միջերկրածով. տերություն: Ընդգրկել է Եվրոպայի արմ. ու հվ–արլ. մասերը, Փոքր Ասիան, Հս. Աֆրիկայի մերձափնյա շրջանները, Ատրիքը և Պաղեստինը: Ըստ ավանդության՝ Հ. հիմնադրել են ***Հռոմուլոս*** և ***Հռեմոս*** երկվորյակ եղբայրները մ. թ. ա. 754/753–ին:

1871–ից՝ վերամիավորված Իտալիայի թագավորության, VI–VIII դդ–ում՝ Բյուզանդիայի տիրապետության տակ, 756–1870–ին (կարճ ընդմիջումներով)՝ Պապական մարզի մայրաքաղաքը: ***Ռիսորջիմենտոյի*** շնորհիվ 1870–ին վերամիավորվել է Իտալիային. 1871–ից՝ Միացյալ Իտալիայի Թագավորության, 1946–ից՝ Իտալիայի Հանրապետության մայրաքաղաքը:

2. Իտալիայի մայրաքաղաքը, Լացիո մարզի վարչ. կենտրոնը՝ Տիբեր գետի ափին: Բն.՝ 2,87 մլն (2014): Իտալիայի քաղ., տնտ., մշակութ. գլխ. կենտրոնն է, տրանսպորտ. խոշոր հանգույց. գործում են «Լեոնարդո դա Վինչի» (կամ «Ֆյումիչինո») և «Չամպինո» միջազգ. օդանավակայանները, «Սան Պաոլո» գետ. նվինգստ. համալիրը, մետրոպոլիտենը (1936–ից): Կան մեքենաշին. (էլեկտրատեխ., ռադիոէլեկտրն. ևն), քիմ., դեղագործ., պոլիգրաֆ., կահույքի, թեթև, սննդամիմի արդ–յան և այլ ձեռն–ներ, համալսարաններ, Դեի Լինչեի ազգ., բժշկ. գիտ–ների, Քառասունի (անդամներ) ազգ. և այլ ակադ–ներ, գիտ. ընկ–ներ, ինստ–ներ, կենտրոններ, թատրոններ («Տեատրո դել օպերա», «Տեատրո դի Ռոմա», «Տեատրո պիկկոլի դի պոդրեկկի» ևն), Վատիկանի թանգարաններն ու պատկերասրահները, Հռոմի ազգ., Կապիտոլիումի և Լատերանոյի թանգարանները, Բորգեզե թանգարանը և պատկերասրահը, Ժամանակակից արվ–ի ազգ. պատկերասրահը ևն:

Հարուստ է տարբեր ժամանակաշրջանների ճարտ. հուշարձաններով՝ Հռոմ. և կայսեր. ֆորումների ավերակները (Տիտոսի հաղթակամար, 81, Տրայանոսի սյուն, 111–114), Կոլիզեումը, Պանթեոնը, Կարակալլայի բաղնիքը ևն: Հայտնի են նաև վաղքրիստ. կատակոմբները, քրիստ. բազիլիկները՝ Սանտա Մարիա Մաջորեն (432–440), Սան Ջովաննիին Լատերանոն (մոտ 313–318), Վերածննդի շրջանի պալատները (դելլա Կանչելլերիա, XV–XVI դդ–ի սահմանագիծ, Ֆառնեզե, XVI դ., ևն), վիլլաները (Դորիա Պամֆիլուս, Բորգեզե, Ֆառնեզե ևն), Կապիտոլիումի հրապարակի համալիրը (1546–ից), Սբ Պետրոսի տաճարը (1506–1614), դինամիկ համալիրները (Սբ Պետրոսի հրապարակ, XVII դ.), եկեղեցիները (Սան Կառլո ալլե Կուատրո Ֆոնտանե, Սանտ Անդրեա ևն) և բարոկկոյի դարաշրջանի պալատները: Հ. կինոարդ–յան, միջազգ. զբոսաշրջության (տարեկան ավելի քան 3 մլն զբոսաշրջիկ) կենտրոններից է: Հ–ի սահմաններում է ***Վատիկան*** քաղաք–պետությունը:

Հ–ում հայերի մասին հիշատակություններ կան դեռևս մ. թ. ա. I դ–ից: Մ. թ. 65–ին Հայոց ***Տրդատ Ա*** թագավորը շուրջ 3–հզ–անոց շքախմբով գնացել է Հ.՝ Ներոն կայսրից թագադրվելու: IV դ–ում Հ–ում մեծ հոչակ է վայելել հայազգի հոետոր ***Պարույր Հայկազնը***: XII–XIV դդ. Հ–ի հայկ. գաղութի համար եղել են մշակույթի ծաղկման շրջան. ընդօրինակվել են բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր: 1584–ին լույս է տեսել Հովհաննես Տերզնցու և Սուլթանշահ Աբգարյան Թոխաթեցու «Տոմար Գրիգորեան» (Հռոմում հայ. 1–ին տպագիր գիրքը): 1883–ից գործում է Լևոնյան վարժարանը՝ կաթոլիկ հայ հոգևորականների պատրաստման բարձրագույն դպրոցը: Ներկայում Հ–ում ապրում է 300–500 հայ:

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ, միջազգ. հաս. կազմ–յուն: Հիմնադրվել է 1968–ին՝ գիտատեխ. հեղ–յան ժամանակաշրջանում՝ մարդկության զարգացման ուսումնասիրությունը խթանելու նպատակով: Միավորում է բազմաթիվ երկրների քաղ., ֆին., գիտ. և մշակութ. ընտրախավի ներկայացուցիչների: Անդամակցությունը սահմանափակ է (մինչև 100 մարդ): Հրատարակում է Հ. ա–ի այսպես կոչված զեկույցները, որոնք ուշադրություն են հրավիրում համընդհ. հիմնախնդիրների վրա: Քարտուղարությունը 2008–ին Համբուրգից (Գերմանիա) տեղափոխվել է Վինտերթուր (Շվեյցարիա): Շնորհում է գերմ. գրավաճառների սահմանած Խաղաղության մրց.:

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, ստրկատիր. իրավունքի առավել զարգացած համակարգ. ձևավորվել է Հին Հռոմում: Հռոմեացի իրավաբաններն այն բաժանել են հանր. իրավունքի (jus publicum) և մասնավոր իրավունքի (jus privatum): Հանր. իրավունքը կարգավորում էր պետ. ընդհ., մասնավորը՝ անհատների մեջ ձևավորվող իրավահարաբերությունները:

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿՈՒՐԻԱ (Curia Romana), Սբ Աթոռի և Վատիկան պետության գլխ. վարչ. մարմինը. Հռոմի կաթոլիկ եկեղեցու կառույցներից: Ներառում է Սբ Աթոռի Գլխ. քարտուղարությունը, հռոմ. 9 միաբանություն, 3 տրիբունալ, եպս–ների սինոդը, պապական հանձնաժողովներ, խորհուրդներ ու կոմիտեներ, Վատիկանի գրադարանը և արխիվները, համալսարանները, Շվեյցար. գվարդիան և այլ հաստատություններ:

ՀՌՈՄԵԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, **1. 1798–99**, հռչակվել է 1798–ի փետր. 15–ին Նապոլեոնի բանակի նվաճած Պապական մարզի տարածքում՝ Ֆրանսիայի հովանավորության ներքո: Վերացրել են եվրոպ. երկրների կոալիցիոն զորքերը 1799–ի սեպտ–ին: 2. **1849**, հռչակվել է 1848–49–ի իտալ. հեղ–յան ընթացքում՝ 1849–ի փետր. 9–ին Պապական մարզի տարածքում: Առաջնորդներն էին Ջ. ***Մադինին*** և Ջ. ***Գարիբալդին***: Անցկացվել են ժողովրդավար. բարենորոգումներ, ընդունել սահմանադրություն: Կործանվել է հուլիսի 3–ին՝ օտարերկրյա (հիմնականում՝ ֆրանս.) ինտերվենտների հարձակումների հետևանքով:

«ՀՌՈՄԵԱԿԱՆ ՀԱՐՑ», հակամարտություն Վատիկանի և Իտալ. պետության միջև: Ծագել է 1870–ին ***Պապական մարզի*** լուծարման (տարածքը դարձել է միավորված Իտալիայի մաս) և 1871–ին միավորված Իտալիայի թագավորության մայրաքաղաքը Հռոմ տեղափոխելու հետևանքով: Պիոս IX–ը հրաժարվել է ճանաչել միավորված Իտալիան: «Հ. հ.» կարգավորվել է 1929–ի Լաթերանյան համաձայնագրերով:

ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱԿՏ 1935, համաձայնագրերի շարք, կնքել են Պ. ***Լավալը*** (Ֆրանսիա) և Բ. ***Մուսոլինին*** (Իտալիա): Մուսոլինին հրաժարվել է Աֆրիկայում

ֆրանս. տարածքների նկատմամբ Իտալիայի նկրտումներից, փոխարենը, գաղտնի բանակցությունների ընթացքում, Լավալը Եթովպիայում գործողությունների ազատություն է տվել Մուսոլինիին՝ նպաստելով Եթովպիայում իտալ. ագրեսիայի ծավալմանը (տես ***Իտալա–եթովպիական պատերազմներ***):

ՀՌՈՄԵԱԿԱՆ ՍԲԲԱԶԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ, 1512–ից՝ Գերմանական ազգի Հռոմ. սրբազան կայսրություն, միջպետ. կազմավորում Եվրոպայում 962–1806–ին: Ներառել է Գերմանիան (գրավել է տիրապետող դիրք), Իտալիայի մի մասը, Չեխիան, Բուրգունդիայի թագավորությունը, Նիդեռլանդները, շվեյց. հողերը, Ֆրանսիայի որոշ տարածքներ ևն: Հիմնադրել է Գերմանիայի թագավոր Օտտոն I–ը: Գոյատևել է մինչև վերջին կայսր Ֆրանց II–ի՝ նապոլեոնյան պատերազմների ժամանակ գահից հրաժարումը:

ՀՌՈՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ «ԼԱ ՍԱՊԻԵՆՑԱ» (լատ.՝ La Sapienza – իմաստություն), Իտալիայի և Եվրոպայի հնագույն համալսարաններից: Հիմնադրվել է 1303–ին Հռոմում: 2015–ին ուներ ավելի քան 113 հզ. ուսանող (ամենամեծաթիվը՝ Եվրոպայում):

ՀՌՈՄԻ ՊԱՊ (լատ.՝ papa), Հռոմեա-կաթոլիկ եկեղեցու (VI դ–ից) և Վատիկանի պետության (1929–ից) գլխի տիտղոսը: Ընտրում է ***կոնկլավը***՝ ցկյանս, 1389–ից՝ միայն ***կարդինալներից***:

Հ. պ. ***Ֆրանցիսկոս*** I–ը ճանաչել ու դատապարտել է (2015–ին) Հայոց ցեղասպանությունը: 2016–ի հունիսի 24–26–ին այցելել է ՀՀ, երկրորդը՝ ***Հովհաննես Պողոս II***–ից հետո (2001):

ՀՌՈՄԿԼԱ, Հռոմ–Քար, Կլայն Հռոմեական (արաբ. անվանումը՝ Կալաատ ար Ռում, թուրք.՝ Ռում-կալե), բք Կիլիկիայում, Եփրատ գետի աջ ափին, Փարզման (այժմ՝ Մերզումեն) վտակի միախառնման տեղում՝ սեպաձև հրվանդանի վրա: Վերջնականորեն ավերվել է 1839–ին՝ Եգիպտոսի Իբրահիմ փաշայի հրետանկոծությունից:

«ՀՌՈՄԿԼԱՅ», պատկերազարդ պարբերաթերթ (1963–68, Հռոմ), Հռոմի Լևոնյան ժառանգավորաց վարժարանի հրտ-յուն:

ՀՌՈՄԿԼԱՅԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ, ***Կիլիկիայի մանրանկարչության դպրոցներից***: Գործել է XII դ–ի 2–րդ կես–12–ին: Այստեղ ընդօրինակված և պատկերազարդված բազմաթիվ մատյաններ նպաստել են կիլիկյան գրքարվ–ի մյուս կենտրոնների աշխուժացմանը [1166–ի (Մտնդ., ձեռ. № 7347), 1193–ի (Բալթիմորի Ուոլթերս պատկերասրահ, ձեռ. № 538), 1251–ի (Մտնդ., ձեռ. № 3033), 1253–ի (Վաշինգտոնի Ֆրիր պատկերասրահ, ձեռ. № 44.17) Ավետարաններ]: Ենթադրվում է, որ Հռոմկլայում է ստեղծվել 1280–ական թթ–ից մինչև 1320–ը նկարազարդված ***«Ութ մանրանկարիչների Ավետարանը»*** (Մտնդ., ձեռ. № 7651): Հայտնի գրիչ–մանրանկարիչներից են Գրիգոր Մլիճեցին, Կիրակոսը, Հովհաննեսը, Վարդանը և ուր.:

ՀՌՈՄՈՒԼՈՍ (Romulus), Հռոմի հիմնադիրը և 1–ին թագավորը (մ. թ. ա. 754/753–717/716): Ավանդության համաձայն՝ Հ–ի և նրա երկվորյակ եղբայր ***Հռեմոսի*** ծնողները եղել են ***Հռեա Սիլվիան*** և ***Մարս*** աստվածը: Ալբա Լոնգա թ–ի գահը զավթած Ամուլիոսը հրամայել է գահի օրինական ժառանգորդ երկվորյակներին գցել Տիբեր գետը: Երկվորյակները փրկվել են, սնվել գայլի կաթով և կրթվել հովվի մոտ:

ՀՌՈՄՈՒԼՈՍ ԱՎԳՈՒՍՏՈՒԼՈՍ (Romulus Augustulus), Արմ. Հռոմ. կայսրության վերջին կայսրը՝ 475–476–ին: Գահընկեց է արել Օդոակրը:

ՀՌՈՓԱՆՈՍ, V դ–ի հույն գրիչ: 405–ին Սամոսատում ***Մեսրոպ Մաշտոցի*** պատվերով մշակել է հայոց նորաստեղծ տառերի գրության ձևերը, գրել հայատառ 1–ին ձեռագիրը, որն սկսվում է «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» նախադասությամբ:

ՀՌՉԱԿԱԳԻՐ, պաշտոն. հայտարարություն: Հ–ով սովորաբար հռչակվում են երկրի ներքին և արտաքին քաղ. հիմն. ուղղությունները, քաղ. կուս–յունների ծրագր. դրույթները, միջազգ. կազմ–յունների գործելաոճի հիմն. դրույթները միջազգ. հարաբերությունների որոշակի ընագավառներում:

ՀՌՉԱԿԱԳԻՐ ԽՍՀՄ ԿԱԶՄԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ, ընդունվել է 1922–ի դեկտ. 30–ին՝ ԽՍՀՄ խորհուրդների 1–ին համագումարի ժամանակ: Եղել է ԽՍՀՄ բազմազգ պետության կառուցման սահմանադր. հիմքը:

ՀՌՉԱԿԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ընդունել է ՀԱԽ–ը (Թիֆլիս) 1918–ի մայիսի 28–ին: Հայ ազգ. պետականության վերականգնման, Հայաստանի առաջին հանրապետության ծննդյան օրն է, նշվում է մայիսի 28–ին: Հռչակագրում ասված էր. «Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ Հայոց ազգային խորհուրդն իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն ու միակ իշխանություն»:

ՀՌՉԱԿԱԳԻՐ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ընդունել է ՀԽՍՀ ԳԽ–ն 1990–ի օգոստ. 23–ին, որով ՀԽՍՀ–ն վերանվանվել է ՀՀ, սահմանվել, որ ՀՀ ողջ տարածքում գործում են միայն նրա օրենքները: Վերականգնվել է տնտ. բազմակացութաձևությունը, սկսվել հողի սեփականաշնորհումը, թույլատրվել բազմակուս. համակարգ ևն: ՀՀ անկախության հռչակագիրը Սահմանադրության հետ հիմնարար փաստաթուղթ է, նրա հետ կազմում է 1 միասն. ամբողջություն:

ՀՌՉԱԿԱԳԻՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ընդունել է Ռուսաստանի ժողկոմխորհը 1917–ի նոյեմբ. 15–ին, ստորագրել են Վ. Ի. ***Լենինը*** և Ի. Վ. ***Ստալինը***: Առաջին օրենսդր. փաստաթուղթն էր, որտեղ արտացոլվել են ազգերի ինքնորոշման իրավունքը և պետության ներսում տարբեր ազգերի սոց. ընկերակցության հիմն. ուղղությունները:

ՀՍԿԱ ԱՍՏՂԵՐ, մեծ չափերի (10–1000 $R_☉$՝ Արեգակի շառավղով), բարձր լուսատվությամբ (100–1000 $L_☉$) ***աստղեր***: Հ. ա–ից ավելի մեծ լուսատվությամբ աստղերն անվանում են գերհսկաներ կամ հիպերհսկաներ: Իրենց մեծ շառավղի և լուսատվության շնորհիվ Հ. ա. Հերցշպրունգ–Ռեսսելի դիագրամի վրա ընկած են գլխ. հաջորդականությունից ավելի վերև և համապատասխանում են լուսատվության II և III դասերին: Որոշ Հ. ա–ի մակերևույթից նյութն ինտենսիվ արտահոսում է:

ՀՍԿԱՆԵՐ, հրեշավոր էակներ հուն. դիցյան մեջ, որոնց ծնել է երկրի աստվածուհի ***Գեան*** երկնքի աստված ***Ուրանոսի*** արյան կաթիլներից: Հ. ընդվզել են Օլիմպոսի աստվածների դեմ, նրանց հաղթել է ***Հերակլեսը*** և արտաքսել երկրի ընդերք: Հ–ի հետ մարտը պատկերվել է Պերգամոնի ք–ի Զևսի տաճարի որմնանկարներում. պահվում են Բեռլինում:

ՀՐԱԲԱԼ (Hrabal) Բոգումիլ (1914–1997), չեխ գրող: Հեղինակ է «Հատուկ նշանակության գնացքներ» (1965, կինոնկար՝ 1967) հակաֆաշիստ. թեմայով, «Ես ծառայել եմ Անգլիայի թագավորին» (1989) պատմվածքների և վիպակների, «Զեռնադրում» (1976), «Գեղեցիկ թախիծ» (1979), «Առլեկինի միլիոնները» (1981) եռերգության:

ՀՐԱԲԽԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գիտ–յուն հրաբուխների և հրաբխայնության մասին: Ուսումնասիրում է հրաբուխների առաջացման պատճառները, դրանց տարածման օրինաչափությունները, շարժընթացի և կառուցվածք. առանձնահատկությունները, հրաբխ. նյութերի (լավաներ, գազեր ևն) կազմը, տեղադրության պայմանները, հրաբխականության դերը երկրի կառուցվածքի ու զարգացման պատմության մեջ ևն:

ՀՐԱԲԽԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐ, ***վուլկանիտներ***, հրաբխ. ժայթքումներից առաջացած ապարներ: Կախված ժայթքման բնույթից՝ լինում են՝ արտահոսված (էֆուզիվ՝ բազալտներ, անդեզիտներ, տրաքիտներ, լիպարիտներ, դիաբազներ ևն) և հրաբխաբեկոր. (պիրոկլաստիկ՝ տուֆեր, տուֆաբրեկչիաներ ևն) տիպերի: Հ. ա. տարբերվում են քիմ. կազմով, կառուցվածք. և տեքստուրային առանձնահատկություններով, ապար կազմող նյութի պահպանվածության աստիճանով:

ՀՐԱԲԽԱՅԻՆ ԳԱԶԵՐ, հրաբխից անջատվող գազերի ընդհ. անվանումը: Տարբերում են էրուպտիվ (ժայթքմանն ուղեկցող) և ֆումարոլային (հանգիստ գործողության) Հ. գ.: Ջերմաստիճանը 95–760°C է, բաղադրության 88–99,6 %–ը ջր. գոլորշիներ են, մնացած 12—0,4 %–ը կազմում են քլորաջրածինը, ծծմբային գազերը, ածխաթթու գազը, ջրածինը, ծծմբաջրածինը և ազոտը:

ՀՐԱԲԽԱՅԻՆ ԽԱՐԱՄՆԵՐ, առաջանում են խառնարանից ժայթքած բազալտ–անդեզիտ. լավայի սառչելու ընթացքում նրա մեջ եղած գազերի բուռն անջատումների ժամանակ: Հրաբխի խառնարանի շուրջ առաջանում են մինչև 450 *մ* բարձր–յան և 3,5 *կմ* տրամագծով խարամ. կոներ, որոնցից էլ արդյունահանվում են Հ. խ.: ՀՀ–ում խարամ. կոները (մոտ 500) անթրոպոգենի հասակի են՝ տարածված Գեղամա (Արմաղան, Մենակասր, Սևկատար ևն), Արագած (Տիրինկատար, Կաքավաքար) լ–զանգվածներում, Եղնախաղի (Երից լեռ), Վարդենիսի (Վարդենիս, Սանդուխտասար ևն), Զանգեզուրի (Ծիծեռնաքար, Շերեփասար, Հովվասար ևն) լ–շղթաներում և Երևանի մերձակայքում (Առինջ, Ավան): Հետախուզված պաշարները՝ մոտ 300 մլն *տ*: Օգտագործում են շին–յան մեջ:

ՀՐԱԲԽԱՅԻՆ ՏՈՒՖ, ապար, որ առաջացել է հրաբխ. ժայթքումների պինդ արգասիքներից (մոխիր, ավազ, լապիլներ, ռումբեր, ոչ հրաբխ. ծագման ապարների բեկորներ)՝ պնդացման և ցեմենտացման ճանապարհով: Կախված մասնակցող

բեկորների բնույթից՝ Հ. տ–երը լինում են լիթոկլաստիկ՝ ապարների բեկորներ, բյուրեղակլաստիկ՝ առանձին միներալների բեկորներ, վիտրոկլաստիկ՝ հրաբխ. ապակու բեկորներ, և խառը կազմի՝ վիտրոբյուրեղակլաստիկ, լիթոբյուրեղակլաստիկ են: Լայնորեն տարածված է ՀՀ–ում. օգտագործում են որպես շինանյութ:

ՀՐԱԲՈՒԽՆԵՐ, երկրբ. գոյացություններ երկրակեղևի ճեղքվածքների և մղանցքերի վրա, որոնցով մշտապես կամ պարբերաբար խորքային մագմատիկ օջախներից Երկրի մակերևույթ են ժայթքում լավաներ, տաք գազեր, գոլորշիներ և ապարների բեկորներ: Հ., սովորաբար, ժայթքման արգասիքներից կազմված առանձին լեռներ են: Ըստ մղանցքերի ձևի՝ Հ. լինում են ճեղքվածք. և կենտր.: Հայկ. լ–աշխարհում կա ավելի քան 1000 հրաբուխ: Դրանցից գործող են Նեմրութ և Թոնդրակ բազմածին բարդ Հ., որոնց խառնարաններում շարունակվում են ծծմբային գազերի ու տաք գոլորշու արտավիժումները: Պայմանականորեն գործող են համարվում նաև Մասիսը և Վայոցսարը: Մասիսի՝ 189–ին և 341–ին, Վայոցսարի՝ VII դ–ում գործելու մասին կան գրավոր հիշատակություններ (Հակոբ Մծբնացի, Ստեփանոս Օրբելյան): Բազմածին, կենտր. և շերտավոր Հ. են Մասիսը, Արագածը, Սիփանը, Նեմրութը, Իշխանասարը, Արայի լեռը: Բազմածին ճեղքվածք. հրաբուխ են Ջավախքի և Գեղամա հրաբխ. լ–ները: ՀՀ բազմածին կենտր. և ճեղքվածք. Հ–ի լանջերին ամենուր տարածված են միաձին, կենտր. խարամ. Հ.:

ՀՐԱԴԵՑ ԿՈՒԼՈՎԵ (Hradec Králové), ք. Չեխիայում: Բն.՝ 93 հզ. (2003): Երաժշտ. գործիքների (W. Hoffmann, Bohemia, Petrof ֆիրմաների դաշնամուրների և ռոյալների) արտադր–յան կենտրոն է:

ՀՐԱԶԱՆ, Զանգու, գետ ՀՀ–ում, Արաքսի ձախ վտակը: Սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հս–արլ–ից հվ–արմ.: Երկ.՝ 141 *կմ*, ավազանը՝ 2560 *կմ*^{2} (առանց Սևանա լճի), ջրի միջին ծախսը՝ 13,9 *մ*^{3}/*վ* (Արզնի), առլզն՝ 138 *մ*^{3}/*վ*, նվզզն՝ 9 *մ*^{3}/*վ*, հոսքը՝ 712 մլն *մ*^{3} (Մասիս ք.): Արաքս է թափվում ծ. մ–ից 820 *մ* բարձր–յան վրա: Համակարգում կա 340 գետակ, որից 25–ն ունեն 10 *կմ*–ից ավելի երկ. (3–ը՝ մինչև 50 *կմ*): Խոշոր վտակները՝ Մարմարիկ, Ծաղկաձոր, Դալար, Արայի գետ, Գետառ: Մնումը հիմնականում ստորերկրյա (51 %) և հալոցքային (37 %) է, վարարումը՝ գարնանը, հորդացումները՝ ամռանը և աշնանը:

Գործում են ***Սևան–Հրազդան կասկադի*** ջրէկները: Հ–ի ջրերն օգտագործվում են 17 ոռոգիչ ջրանցքներով, որոնք սկիզբ են առնում կասկադի ջրէկներից և Հ–ի ստորին հոսանքից: Ափին են Սևան, Հրազդան, Չարենցավան, Լուսակերտ, Երևան ք–ները, Արզնի առողջարանը: Հովտում ստեղծվել է հանգստի գոտի: Գետի վրա կառուցված բազմաթիվ կամուրջներից հնագույնը Կարմիր կամուրջն է (1679, Երևան): Ափերը բնակեցվել են սկսած հին քարի դարից (Արզնի, Երևանյան քարայրեր ևն): Ուրարտ. ժամանակներում և միջնադարում Հ–ից անցկացվել է մի քանի ջրանցք՝ Ռուսայի (թունելով), Դալմայի, Արուհայաթի ևն, ափերին կառուցվել են ուրարտ. Թեյշեբաինի (Կարմիր բլուր) և Պահլավունիների ամրոցները, Սբ Աստվածածին եկեղեցին (XI դ., Բջնի): Հ–ի վրա են «Հաղթանակի» (1945), Հրազդանի մեծ (1956), Նուռնուսի (1981), Դավթաշենի (2000) կամուրջները:

ՀՐԱԶԴԱՆ, ք. ՀՀ–ում, Կոտայքի մարզկենտրոնը՝ Հրազդան գետի ափին՝ Երևանից 40 *կմ* հս–արլ.: Բն.՝ 53,7 հզ. (2012): Քաղաքի շրջագծի մեջ են Ներքին Ախտա, Աղբյուրակ, Վանատուր (նախկինում՝ Աթարբեկյան), Մաքրավան, Զրառատ, Կաքավաձոր գ–երը: Խորհրդ. տարիներին եղել է հանրապետության արդ. կենտրոններից: Այժմ էներգետիկ. կարևոր հանգույց է, գործում են Հրազդանի ջէկը և ջրէկը: Զարգացած է մշակող արդ–յունը (ոչ մետաղ. և ցեմենտի արտադր–յուններ): Տարածքում հայտնաբերվել են մ. թ. ա. II–I հզ–ամյակների դամբարաններ: Պահպանվել է XIII դ–ի կարավանատուն: Քաղաքի արմ–ում է Մաքրավանք վան. համալիրը (XIII դ.): Գլխ.՝ Սբ Աստվածածին եկեղեցին նորոգվել է 1980–ական թթ–ին:

«ՀՐԱԶԴԱՆ», գր., հաս. և տնտ. օրաթերթ (1908–09, Երևան): Խմբ–հրտ.՝ Պողոս Կանդուրալյան:

ՀՐԱԶԴԱՆԻ ԵՐԿԱԹԻ ՀԱՆՔԱՎԱՅՐ, Հրազդան ք–ից մոտ 800 *մ* հս–արլ.՝ Սուղաղյան բլրի շրջակայքում: Ուսումնասիրվել է 1948–49–ին: Հանքաքարերը խորք. զանգվածի սահմանակից տեղամասերում տարածված սկառներ են՝ կազմված նռնաքար, էպիդոտ, մագնետիտ միներալներից: Սկառնային հանքայնացման գոտու երկ. մոտ 1400 *մ* է, հաստ.՝ 150–200 *մ*: Մագնիս. երկաթաքարի հետախուզված պաշարները՝ մոտ 75 մլն *տ*, հեռանկարայինը՝ մոտ 100 մլն *տ*՝ 27,95 % Fe–ի միջին պարունակությամբ: Հանքանյութը պարունակում է արդ. նշանակության հազվագյուտ տարրեր:

ՀՐԱԶԴԱՆ–ՍՈԼԱԿԻ ՋՐԱՆՑՔ, ՀՀ Կոտայքի մարզում: Սկիզբ է առնում Հրազդանի ջրէկի դերիվացիոն ջրանցքի 13 *կմ*–ից: Շահագործման է հանձնվել 1964–ին: Զգվում է Հրազդան ք–ից մինչև Սոլակ գ.: Մայր ջրանցքի երկ. 12 *կմ* է (ընդհ. երկ.՝ 22,7 *կմ*), ջրթողունակությունը՝ 1,1 *մ*^{3}/*վ*: Ոռոգում է Քաղսի, Սոլակ գ–երի և Հրազդան ք–ի հողատարածքները:

ՀՐԱԶԵՆ, զենք, որի փողի փոսորակից խոցող տարրի (գնդակ, արկ, ական, նռնակ) դուրսնետման համար օգտագործվում է վառոդի (այրվող խառնուրդի) այրումից առաջացող գազերի ճնշման ուժն ու էներգիան: Առաջին նմուշներն արդեն XII դ–ում օգտագործել են արաբները, Արմ. Եվրոպայում Հ. տարածվել է XIV դ–ում: Հ. դասակարգվում է՝ ըստ գործողության հեռ–յան՝ հրաձգ. (ձեռքի) և մոտակա մարտի միջոցներ, հրետանաականանետ և նռնականետ (ակտիվ և ակտիվառեակտիվ նետումով), ըստ փողի տիպի՝ հարթափող և ակոսավոր, ըստ լիցքավորման տիպի՝ ինքնալիցքավորվող և ինքնաձիգ, ըստ տրամաչափի՝ փոքրա– և խոշորատրամաչափ ևն: Տես նաև ***Հրաձգային զենք, Սառը զենք***:

ՀՐԱԷԼԵԿՏՐԻԿՆԵՐ, բյուրեղ. դիէլեկտրիկներ, որոնց մակերևույթի վրա ջերմաստիճանի փոփոխության դեպքում առաջանում են էլ. լիցքեր: Հ. կարող են լինել միայն ոչ կենտրոնահամաչափ բյուրեղները: Բոլոր Հ. ***պյեզոէլեկտրիկներ*** են (բայց ոչ հակառակը): Որոշ Հ. ունեն սեգնետոէլ. հատկություններ (տես ***Սեգնետոէլեկտրիկներ***): Բնորոշ Հ–ից է տուրմալինը:

ՀՐԱԹԻԹԵՌՆԵՐ, ցերեկ. թիթեռների վերնաընտանիք: Թևերի բացվածքը սովորաբար 1–2 *սմ* է, երբեմն՝ մինչև 5 *սմ* և ավելի: Հայտնի է 10 հզ. տեսակ՝ տարածված լայնորեն. բազմաքանակ են անապատներում և տափաստաններում: Որոշ տեսակներ (մարգագետնային թիթեռնիկ, հվ., ալրավոր, արևածաղկի և այլ Հ.) գղտ. մշակաբույսերի վնասատուներ են:

ՀՐԱԿՆԱՏ, պաշտպ. կառույցներում և զրահապատ աշտարակի վրա բաց (երբեմն՝ կափարիչով փակվող) անցք՝ ***հրազենով*** կրակելու համար: Ձևն ու չափերը կախված են հրազենի տեսակից, գնդակոծման տեսադաշտից և պայմաններից:

ՀՐԱՀԱՂՈՐԴ ՔՈՒՂ, Բիկֆորդի քուղ, այրման հաստատուն արագություն ունեցող քուղ: Նախատեսված է հրապատիճճայթիչին որոշակի ժամանակահատվածում (քուղի երկ–յամբ որոշվող) ջերմ. իմպուլս հաղորդելու համար: Հ–ի այրման արագությունը 10 *մմ*/*վ* է: Հայտնագործել է անգլիացի գյուտարար Ու. Բիկֆորդը 1831–ին: Օգտագործում են հիմնականում պայթեցման աշխ–ներում:

ՀՐԱՀԱՆ Հրանտ (Նազարյան Հրանտ Խաչիկի, 1892–1988), գրող, թարգմանիչ: 1946–ին հայրենադարձել է: Հեղինակ է «Հերոսի մը նամականին», «Համբուրէ զիս» (երկուսն էլ՝ 1931), «Հրաշագործ միութիւն» (1936), «Արցունք և ժպիտ» (1949), «Բալկանների լանջերում» (1951) պատմվածքների ու վիպակների ժող–ների, «Իմ կյանքի վեպը» (հ. 1, 2, 1954, 1958, վերափոխված տարբերակը՝ «Խոսում են անմահները», 1970), «Կյանքն ընդդեմ մահվան» (2004) վեպերի: Բուլղ–ից թարգմանել է Խ. Բոտևի և Ի. Պետրովի գործերից:

ՀՐԱՀԱՆ, 1. (ռազմ.) ձեռքի հրազենի փակաղակի կամ հարված. մեխանիզմի մաս՝ կրակոցի ժամանակ լիցքը բոցավառելու համար: Ժամանակակից հրազենի մեջ, մարտ. զսպանակի ազդեցությամբ, Հ. հարվածում է զարկանին, որը ջարդում է փամփուշտի հրապատիճը: 2. (Կենցաղ.) քարի, երկաթի կամ պողպատի կտոր՝ կայծքարից կրակ ստանալու համար. գործածությունից դուրս է եկել: XX դ–ի սկզբին:

ՀՐԱՀԱՆ IV (ծ. թ. անհտ–մ. թ. ա. 2), պարթևների արքա՝ մ. թ. ա. 38/37–ից: ***Որոդես II***–ի որդին: Մ. թ. ա. 31–ին դաշինք է կնքել գերեվարված Հայոց արքա Արտավազդ Բ–ի որդու՝ Պարթևստանում ապաստանած ***Արտաշես Բ***–ի հետ, օժանդակել նրան՝ վերագրավելու Մեծ Հայքի գահը: Սպանվել է դավադրաբար:

ՀՐԱՀԵՍՏՆԵՐ, 1580°C–ից ոչ ցածր ***հրահևստություն*** ունեցող նյութեր և շինվածքներ, որոնք պատրաստվում են հիմնականում միներալ. հումքից: Տարբերում են **հրահեստ** (հրահեստությունը՝ 1500–1770°C), **բարձրհրահեստ** (1770–2000°C) և **բարձրագույն հրահեստության** (2000°C–ից բարձր) շինվածքներ: Հ–ի առավել տարածված տեսակներն են հրակավայինը, մագնեզիումայինը, դինասայինը: Պատրաստում են աղյուսի, փոշիների ևնի տեսքով: Օգտագործում են արդ. վառարաններ, հնոցներ և այլ ջերմատեխ. ագրեգատներ շարելու համար:

ՀՐԱԶԳԱՅԻՆ ՋԵՆՔ, մինչև 20 *մմ* տրամաչափի փողավոր ***հրազեն***՝ գնդակներով, կոտորակով, ալաքաձև տարրերով կրակելու համար: Կիրառվում է ռազմ. նպատակներով (թշնամու կենդանի ուժի և հրազեն. միջոցների կամ թեթև զրահապատ և օդ. թիրախների ոչնչացման համար), նաև սպորտում և որսորդության

մեջ: Տեսակներն են՝ ***ափրճանակները, ռևոլվերները***, ատրճանակ-գնդացիրները, ***ինքնաձիգ զենքը***, հրացանները, գնդացիրները (հատուկ տեսակներ են տանկ. և ավիացիոն գնդացիրները): Դասակարգվում են հարթափող և ակոսավոր, ինքնալիցքավորվող և ինքնաշխատ Հ. զ.: Տես նաև *Որսորդական զենք, Փոքրատրամաչափ զենք*:

ՀՐԱՉԳԱՅԻՆ ՍՊՈՐՏ, 1. հրազեն., օդամուղ զենքով ***հրաձգության*** և ***նետաձգության*** մարզաձևերի համախումբ, 2. սպորտի մի քանի տեսակների՝ գնդակային հրաձգության, ստենդային հրաձգության և նետաձգության համախումբ:

ՀՐԱՉԳՈՒԹՅՈՒՆ, 1. կրակոցներ ցանկացած զենքով (հրազեն, օդաճնշական և նետման զենքեր): 2. (Ռազմ.) կրակահերթերի արձակում՝ առաջադրված խնդիրը կատարելու համար հրազենի և այլ զենքերի կիրառումով: Հ–յան տարբերն են **նախապատրաստությունը** (կրակադիրքերի գրավում, թիրախների հետախուզում, զենքի և զինամթերքի նախապատրաստում), **փոխհրաձգությունը, թիրախների ոչնչացումը**: Ըստ նպատակի լինում են՝ մարտ., ուս., նմանակ., ըստ զենքի տեսակի՝ հրաձգային զենքով, հրետանիով (վերգետնյա, զենիթ., նավ.), տանկերով, ինքնաթիռներով, ուղղաթիռներով: 3. Տես *Հրաձգային սպորտ*: 4. Կրակոցի հնչյունների նման սուր, կտրտված ձայներ (օր.՝ անսարք շարժիչից եկող):

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ, 1. իրավ. ակտ, որը հրապարակում է պետության գլուխը: Լինում է նորմատիվ (տես *Նորմատիվ ակտ*) կամ ոչ նորմատիվ (պաշտոնի նշանակում, պարգևատրում ևն): 2. (Ռազմ.) գլխ. զորահրամ–ի՝ նավերի և համագործակցող ինքնաթիռների համար հաստատած կարգադրությունը՝ մարտ. առաջադրանքը լուծելու ժամանակ:

ՀՐԱՅՐ, **Դժոխք, Ուրվական** (Ղազարյան Արմենակ Մամբրեի, 1864–1904), ազգ–ազատագր. շարժման գործիչ, ֆիդայի: 1891–94–ին՝ Սասունի ինքնապաշտպ. մարտերի ղեկ–ներից: Աչքի է ընկել Տալվորիկի կռվում (1893): 1903–04–ին մասնակցել է Սասունի ինքնապաշտպ. կռիվներին: Զոհվել է Գելիեգուզանում: Թաղվել է այնտեղ:

ՀՐԱՆԴ, **Հրանտ**, հայկ. հեթանոս. տոմարի ամիսների 2–րդ օրվա անվանումը:

ՀՐԱՆԵՏ, **վառոցք**, զենքի տեսակ. նախատեսված է թշնամու կենդանի ուժը և նյութ. միջոցներն այրվող հրախառնուրդի շիթով կամ հրախառնուրդով լցված պատիճով ոչնչացնելու համար: Լինում են **շիթային** [հրախառնուրդի նետում սեղմված օդով (ազոտով) կամ հատուկ նետող վառոդ. լիցքով (**ֆուգասային Հ.**)] և **պատիճային (ռեակտիվ Հ.)**: Շիթային Հ–ի հեռահարությունը 50–70 *մ* է, ռեակտիվներինը՝ 1000 *մ*:

ՀՐԱՆՈՒԹ, 1. հիմնականում՝ գետնամերձ, զենիթ. կամ հեռահար հրետան. զենք: Այուս հրետան. զենքերից (հաուիցիցներ և ականանետներ) տարբերվում է արկերի մեծ սկզբն. արագությամբ (800–1200 *մ/վ*): Տրամաչափը 20–210 *մմ* է, հրաձգության հասողությունը՝ մինչև 35 *կմ* և ավելի: 2. Ճառագայթ. թերապիայի ապարատ:

ՀՐԱՆՏ ԱՐՄԵՆ (Քոյությկյան Հրանդ Գրիգորի, 1895–1973), պատմաբան, իրավաբան, մշակութ. գործիչ: 1911–ից՝ Դետրոյտում: Հեղինակ է «Մեծն Տիգրան» (անգլ.՝ 1940, հայ.՝ 1947), «Մարզպանը եւ սպարապետը» (1952), «Քննադատները ջղայնացած են» (1952), «Հայկական Գեղագոյն ատեան: Վասակ Սիւնի (Ամբաստանեալ)» (1969) աշխ–ների:

ՀՐԱՇԱԿԱԲԵՐԴ, **Հրաշկաբերդ**, բերդ Մեծ Հայքի Սյունիք նահգ–ի Վայոց Ձոր գվռ–ում: XII դ–ում տիրել են սելջուկ–թուրքերը, XIII դ–ում՝ Օրբելյանները: Ավերակները պահպանվել են Վայոց ձորի մարզի Գնիշիկ գ–ից հվ՝ Հարսնաքար լ–ան գագաթին:

ՀՐԱՇՔ, գերբնական երևույթ կրոն. և դից. պատկերացումներում, որն ի հայտ է եկել աստված., այնկողմնային ուժի միջամտությամբ: Փիլ. իմաստով՝ ապշեցուցիչ երևույթ, որը զարմացնում է արտասովորությամբ:

ՀՐԱՉ (Թիրաքյան Հայկ, 1871–1915), ազգ–ազատագր. շարժման գործիչ: 1896–ի «Բանկ Օտոմանի» միջադեպի մասնակիցներից: 1901–ին մեկնել է Իզմիր, որտեղ ահաբեկչության մեղադրանքով ձերբակալվել է: Ազատ է արձակվել երիտթուրք. հեղաշրջումից (1908) հետո. վերադարձել է Կ. Պոլիս և ստանձնել «Ազատամարտ» թերթի վարչ. պատասխանատվությունը: Մեծ եղեռնի զոհ:

ՀՐԱՉ ԵՐՎԱՆԴ (Յաղուբյան Նշան, 1885–1968), հաս. գործիչ, խմբ.: Խմբագրել և հրատարակել է «Արագած» (Նյու Յորք), «Պահակ» (Բոստոն), «Արօր» (Ֆրեզնո), «Ապագայ» (Փարիզ), «Ժողովրդի ձայնը – Ժամանակ» (Կ. Պոլիս), «Պայքար» (Բոստոն) պարբ–ների: 1915–ի ապրիլի 24–ին Կ. Պոլսում պատահաբար փրկվել է ձերբակալությունից և, որպես ԱՄՆ քաղաքացի, վերադարձել Նահանգներ, որտեղ ծավալել է հաս. լայն գործունեություն:

ՀՐԱՉԻԱ, Հայոց թագավոր՝ մ. թ. ա. մոտ 630–590–ին: ***Պարույր Սկայորդու*** որդին և հաջորդը: Հույն պատմագիրներ Հերոդոտոսը և Ստրաբոնը նրան անվանել են Պրոտոթիեսի որդի Մադիես (Մադիոս): ***Մովսես Խորենացին*** Հ–ին համարել է Նոր Բաբելոնիայի Նաբուգոդոնոսոր I թագավորի ժամանակակիցը (մ. թ. ա. 604–562):

ՀՐԱՉԻԱ, Ազնիվ (Մինասյան Ազնիվ Գրիգորի, 1853–1919), դերասանուհի: Հայ թատրոնի դաս. ռեալիզմի խոշոր վարպետներից: 1869–ից՝ Կ. Պոլսի «Արևելյան», ապա՝ «Օսմանյան» թատերախմբերի, 1880–ական թթ–ին՝ Թիֆլիսի, 1890–1900–ական թթ–ին՝ Բաքվի հայկ. թատրոնների դերասանուհի (Ռուզան՝ Մուրացանի «Ռուզան», Ժաննա դ'Արկ՝ Ֆ. Շիլլերի «Օռլեանի կույսը», Նինա՝ Մ. Յ. Լերմոնտովի «Դիմակահանդես», Մարգարիտ Գոթիե՝ Ա. Դյումա–Որդու «Կամելիազարդ տիկինը», ևն): Հ–ի արվին բնորոշ են խոր հուզականությունը, դրամատիկ. զսպվածությունը, հոգեբ. երանգների հարստությունը: Հեղինակ է «Իմ հիշողություններս» (1909) գրքի:

ՀՐԱՉՅԱՆ (Մեսրոպյան) Խաչիկ Թադևոսի (1912–1989), գրող, թարգմանիչ, խմբ.: ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1985): Հեղինակ է «Շեփորներ» (1931), «Բոլոր գույները» (1985) և այլ բանաստեղծությունների, «Չորրորդ հարկի պատուհանից» (1965) պատմվածքների, «Երեքից մինչև տասներեքը» (1973) մանկ. չափածո և արձակ գործերի ժող–ների, «Ուրցի Մարան» (1961) վեպի, «Ռոմանտիկները» (1963) վիպակի և այլ գործերի: Թարգմանել է ռուս., եվրոպ. և ամերիկացի դասականների, նաև Վ. Սարոյանի գործերից:

ՀՐԱՊԱՐԱԿ, ճարտարապետորեն կազմակերպված, շենքերով և այլ կառույցներով եզերված տարածություն: Քաղաք. Հ–ների նախատիպերից են Կրետեի, Եգիպտոսի, Բաբելոնի, Ասորեստանի պալատ. և տաճար. համալիրների շքահանդես. բակերը: Միջնադար. Հայաստանի քաղաքների (Վան, Կարս, Անի, Երևան ևն) Հ–ներն ունեցել են հաս. և քաղաքաշին. կարևոր դեր: Գլխ. Հ. քաղաքի միջուկն է, սովորաբար ունենում է մեծ չափեր, մոնումենտալ կառուցապատում (Երևանի Հանրապետության, Մոսկվայի Կարմիր և այլ Հ–ներ):

«ՀՐԱՊԱՐԱԿ», հաս–քաղ. օրաթերթ (2008–ից, Երևան): Հիմնադիր–խմբ.՝ Արմինե Օհանյան:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ, ԽՍՀՄ–ում գործաչովյան վերակառուցման տարիների (1985–91) կարգախոս: Այն պետք է նպաստեր խորհրդ. հաս–յան հոգևոր–մշակութ. կյանքի, երկրում տիրապետող գաղ. թելադրանքի, կաղապարվածության և սահմանափակվածության մթնոլորտի վերափոխմանը: Հ–յանը բնորոշ են հաս–յան բոլոր խավերի համար տեղեկատվության մատչելիությունը, ազատ քննարկումը, հաստատությունների, կազմ–յունների և պաշտոնատար անձանց գործունեության վերահսկելիությունը:

«ՀՐԱՎԻՐԱԿ», ազգ., հաս. պարբերաթերթ (1925–26, Երևան): ՀՕԿ–ի կենտր. վարչության պաշտոն. հրտ–յուն:

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐԻ ԱՋԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ, ՀԿ, հիմնադրվել է 1998–ին Երևանում: Անդամակցում են ՀՀ–ում, ԼՂՀ–ում գործող շուրջ 40 հրտչ–յուններ, տպագրատներ, Սփյուռքից՝ համազգայինի հրտչ–յունը (Բեյրութ), անհատ հրտ–ներ՝ Ֆրանսիայից, Գերմանիայից, ԱՄՆ–ից, Թուրքիայից: Լույս է ընծայում «Հայաստանի գրքերը տպագրության մեջ և վաճառքում» հանդեսը: Նախագահներ՝ Վահան Խաչատրյան, Մկրտիչ Կարապետյան (2010–ից):

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾ, մշակույթի և տնտ–յան բնագավառ. գրաղվում է գրքերի, գրքույկների և ոչ պարբ. հրտ–յունների պատրաստմամբ, տպագրությամբ և տպագիր արտադրանքի տարածմամբ: Ներառում է գրքի հրտ–յան բոլոր հիմն. գործողությունները: XXI դարասկզբից ձևավորվել է գրահրտչ–յան նոր՝ էլեկտրոն. (թվային) տեսակ. լույս են տեսնում նաև էլեկտրոն. գրքեր, որոնք զուգակցում են և գրքի, և պրոցեսորների հնարավորությունները: Տես նաև *Հայկական տպագրություն*:

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, պոլիգրաֆ ձեռն. (պետ., հաս., մասնավոր), որը խմբագրում և տպագրության է պատրաստում գրքեր, գրքույկներ, պարբ–ներ, նոտաներ, ազդագրեր և այլ տպագր. արտադրանք: Լինում են գրքային, գրքաամսագրային, լրագրային, լրագրաամսագրային և այլ Հ–ներ:

ՀՐԱՏԵԽՆԻԿԱ, տեխնիկայի բնագավառ, որը կապված է այրվող նյութեր պարունակող բաղադրությունների ու դրանցով հանդերձված շինվածքների՝ հրթիռների, հրավառությունների, պայթածնմբաղյուսիկների արտադր–յան և կիրառման հետ:

ՀՐԱՅԱՆ, 1. երկարափող հրազեն. զենքի ընդհ. անվանումը: Ի հայտ է եկել XIV–XV դդ–ում: XIV դ–ում պատրույգավոր փականակի հայտնագործությունից հետո ստեղծվել են *մուշկետները*: XVII դ–ի վերջից

Արմ. Եվրոպայում տարածվել են կայծքրով, իսկ XIX դ–ում՝ հարթափող Հ–ները: 2. Որսորդ. և մի քանի այլ հատուկ զենքերի (օր.՝փողային Հ., հակատանկ. Հ.) և սարքերի (օր.՝ հողմահարացանի) ընդհ. անվանումը:

ՀՐԱՔԱՐԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, մետաղ. հանքավայրերի տիպ, ջրաջերմ., միջին ջերմաստիճանի, փոքր խոր–յունների առաջացումներ՝ կազմված հիմնականում *հրաքարից* (զուգորդված քալկոպիրիտի, բոռնիտի, քալկոզինի, սֆալերիտի, գալենիտի, երբեմն՝ տելուրիտների և այլ միներալների հետ): ՀՀ–ում Հ. հ–ին Ալավերդու, Շամլուղի, Ախթալայի, Կառնուտի, Վազաշենի, Կապանի, Շահումյանի (Ալավերդի–Կապանի մետաղածն. գոտի) և Դիլիջանի, Տանձուտի, Հանքաձորի, Զքնաղի, Արմանիսի (Սևան–Ամասիայի մետաղածն. գոտի)] բնորոշ է ոսկու և արծաթի բարձր պարունակությունը:

ՀՐԱՔՈՏ–ՊԵՐՈՒԺ, գվռ Մեծ Հայքի Փայտակարան նահգ–ում: Հիշատակվում է *«Աշխարհացոյց»*–ում (ստույգ տեղադրությունն անորոշ է): Հավանաբար ընդգրկել է ներկայի Միլի դաշտը՝ Փայտակարան ք–ով:

ՀՐԱԴԵՀԱՅԻՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ, պետ. և հաս. միջոցառումների համալիր. անցկացվում է *հրդեհները* կանխարգելելու, առաջացած հրդեհների տարածումը սահմանափակելու, այրվող շենքերից մարդկանց տարհանման պայմաններ ստեղծելու և հրդեհները մարելու համար:

ՀՐԱԴԵՀԱՉ ՌԱԶՄԱՄԹԵՐՔ, գնդակներ, հրետանասարքեր, ավիառումբեր, ձեռքի նռնակներ, որոնք նախատեսված են հրդեհելու միջոցով թշնամու բռնկվող օբյեկտները ոչնչացնելու, կենդանի ուժն ու մարտ. տեխնիկան վնասելու համար: Հ. ռ. օգտագործվում է նաև ոչնչացման այլ եղանակների հետ զուգակցված, օր.՝ **բեկորահրդեհիչ սարքերում, զրահահար հրդեհիչ սարքերում, գնդակներում** ևն:

ՀՐԵԱԿԱՆ ԳԻՐ, Հրեական քառակուսի **գիր**, եբրայական այբուբեն, հին և ժամանակակից հրեաների գիրը, արևմտասեմ. գրի ճյուղ, որ սկզբնավորվել է արամեական գրից: Հին հրեերենով ձեռագրերի, հինհրեական լեզվով գրվ–յան, իվրիտ, իդիշ և այլ ժամանակակից լեզուների գիրը: Սկզբնապես բաղաձայն. գիր էր. իվրիտում 4 տառ օգտագործվել է որպես ձայնավոր, երբեմն կիրառվում է տողավերևի և տողատակի ձայնավորումների նշանների համակարգը: Իդիշում տառերի մի մասը ստացել է ձայնավորների նշանակություն: Հնագույն գրավոր հուշարձանները ավանդվել են մ. թ. ա. XI–X դդ–ից:

ՀՐԵԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, **Հուդայի թագավորություն**, պետություն Հվ. Պաղեստինում՝ մ. թ. ա. մոտ 928–586–ին: Կազմավորվել է Իսրայելա–Հուդայական թագավորության անկումից հետո: Մայրաքաղաքը՝ *Երուսաղեմ*: 1–ին թագավորը *Սողոմոն Իմաստունի* որդի Ռոբովան էր (մ. թ. ա. մոտ 928–911): Նվաճել է Բաբելոնի արքա Նաբուգոդոնոսոր II–ը:

ՀՐԵԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ պետական, գործել է 1919–49–ին, նախ՝ Պետրոգրադում, 1920–ից՝ Մոսկվայում (մինչև 1925–ը՝ Մոսկվայի պետ. հրեական կամեր. թատրոն): Գեղ. ղեկ.՝ Ա. Մ. Գրանովսկի (մինչև 1929–ը), առաջատար դերասաններ՝ Ս. Մ. Միխոելս (1929–ից՝ գեղ. ղեկ.) և Վ. Լ. Զուսկին: 1988–ից Մոսկվայում գործում է «Շալոմ» հրեական թատրոնը:

Հրեական գիրը

Հրեական այբուբենի տառերը					Աղյուսակ գիր (՝ հրաղածայնի առկայությամբ ձայնավորման օրինակով)	՝w, ՝j տառերի միջոցով ձայնավորների նշանակումը և ֆակուլտատիվ հնչյունատարբերիչ (դիակրիտիկ) նշանների ձայնավորումը	
Աղյուսակ գիր	Ձեռագիր	Հնչումը հին հրեերենում	Հնչումը ժամանակակից իվրիտում	Հնչումը իդիշում		Հնչումը հին հրեերենում	Հնչումը ժամանակակից իվրիտում
א	א	՝	՝,–	a[5]	הַ	ha	ha
ב	ב	b, bb, β[2]	b, v[2]	b, (v[6])	הָ	hā, ho	ha, ho
ג	ג	g, gg, γ[2]	g	g	הֶ	he, hē	he
ד	ד	d, dd, δ[2]	d	d	הֵ	hē	he
ה	ה	h[4]	h[4]	h	הִ	hi	hi
ו	ו	w, ū, ō	v, u, o	u[5]	הִי	hī	hi
ז	ז	z, zz	z	z[5]	הֹ	hō	ho
ח	ח	ḥ	χ	(χ[6])	הוֹ	hō	ho
ט	ט	ṭ, ṭṭ	t	t[5]	הֻ	hu	hu
י	י	j, jj, ī, ē	j, i, e	i, j[5]	הוּ	hū	hu
כ ך	כ ך	k, kk, χ[2]	k, χ[2]	χ, (k[6])	הָ	hə, h	hə, h
ל	ל	l, ll	l	l	הַ	hă	ha
מ ם	מ ם	m, mm	m	m	הֶ	hĕ	he
נ ן	נ ן	n, nn	n	n	הָ	hŏ	ho
ס	ס	s, ss	s	s			
ע	ע	՝	՝	e			
פ ף	פ ף	p, pp, φ[2]	p, f[2]	f[5]			
צ ץ	צ ץ	ṣ, ṣṣ	c	c			
ק	ק	ķ, ķķ	k	k			
ר	ר	r, rr	r	r			
ש	ש	š, šš, ś, śś[3]	š, s[3]	š (s[6])			
ת	ת	ṯ, ṯṯ, θ[2]	t	(t, s[6])			

ՀՐԵԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐՋ, ՌԴ Հեռավորարև. դաշն. օկրուգի կազմում: Տարածքը՝ 36,3 հզ. *կմ*[2], բն.՝ 166 հզ. (2015): Վարչ. կենտրոնը՝ Բիրոբիջան: Կազմավորվել է 1934–ին: Ներառում է 1 օկրուգ. ենթակայության քաղաք և 5 շրջան: Ազգ. կազմը՝ ռուսներ (92,7 %), ուկրաինացիներ (2,8 %), հրեաներ (1,0 %): Զարգացած են գղտ. մեքենաշինությունը, մետաղ ուղղվածության գղտ–յունը, մեղվաբուծությունը, որսորդությունն ու ձկնորսությունը: Տարածքով է անցնում Անդրսիբիր. երկթղ–ին:

«ՀՐԵԱԿԱՆ ՀԱԿԱՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾ», «սարքվել» է ԽՍՀՄ–ում 1948–ին՝ Հրեական հակաֆաշիստ. կոմիտեի անդամներին պետ. հանցագործությունների և լրտես. գործունեության մեղադրանքով: Կոմիտեն հիմնվել է 1941–ի օգոստ–ին՝ խորհրդ. և համաշխ. հանրությանը միավորելու ֆաշիզմի դեմ: 1948–ի նոյեմբ–ին կոմիտեն լուծարվել է, իսկ անդամների մի մասը՝ ձերբակալվել: 1952–ի հուլիսին կոմիտեի ղեկ–ները դատապարտվել են երկարամյա բանտարկության: 1955–ին ԽՍՀՄ Գերագույն դատարանի վճռով մեղադրյալներն արդարացվել են:

ՀՐԵԱՆԵՐ (ինքնանվանումը՝ յեգուդիմ, ժիդ, այիդ), ժողգ: Ընդհ. թիվը՝ 14 մլն (2013): Ապրում են Իսրայելում (6,2 մլն), ԱՄՆ–ում (5,4 մլն), Ֆրանսիայում (480 հզ.), Կանադայում, Մեծ Բրիտանիայում, ՌԴ–ում և այլուր: Մեծ մասը խոսում է բնակության երկրի լեզվով, մի մասը՝ իվրիտով, իդիշով, հարևան լեզուների (իսպ., արաբ., պարսկ. ևն) ձևափոխված տարբերակներով: Հավատացյալները հիմնականում հուդայական են: Սփյուռքում բաժանված են աշքենազների և սեֆարդների ենթաէթնիկ. խմբերի:

ՀՐԵԵՐԵՆ, տես *Երբայերեն*:

«ՀՐԵՇ ՈՒՌՈՒՑՔ», **տերատոմա** (< հուն. teras, սեռ. հոլ.՝ teratos – հրեշ և *...ոմա*), բարորակ ուռուցք՝ պայմանավորված սաղմն. զարգացման խանգարմամբ: Որպես կանոն՝ բաղկացած է մի շարք հյուսվածքներից (էպիթել., մկան., նյարդ. ևն)՝ ներառյալ դրանց տարբերակված հավելումները (մազեր, ատամներ ևն):

ՀՐԵՇԱԾՆՈՒԹՅՈՒՆ, **տերատոգենեզ**, բույսերի, կենդանիների և մարդու մոտ անկանոնությունների ու այլանդակությունների ձևավորումը՝ սաղմն. զարգացման կենսընթացի խանգարումների հետևանքով: Պայմանավորված են ինչպես գենետիկ. գործոններով (տես *Ժառանգական հիվանդություններ*), այնպես էլ պտղի վրա անբարենպաստ ազդեցություններով (օր.՝ ներարգանդ. վարակ ևն):

ՀՐԵՇՆԵՐ, առասպել. արարածներ, պատկերացվել են անբնական ու զարհուրելի կերպարանքով, բազմագլուխ, խառնածին ու այլաձև մարմիններով: Հին հայերը Հ–ին անվանել են վիշապ, արալեզ, հուշկապարիկ, ճիվաղ ևն:


ՀՐԵՇՏԱԿՆԵՐ, Աստծու և մարդկանց միջև միջնորդ գերբնական էակներ հուդայական, քրիստ. և մահմեդ. կրոնների ու դիցյան մեջ: Քրիստ. արվ–ում Հ–ին նախապես պատկերել են մարդկային կերպարանքով: Հետագայում համարվել են անմարմին ոգիներ և պատկերվել թևավոր:

ՀՐԵՏԱՆԻ, 1. ցամաք. զորքերի տեսակ. նախատեսված է թշնամու կրակ. միջոցների, մարտ. տեխնիկայի, կենդանի ուժի, պաշտպ. կառույցների և այլ օբյեկտների (թիրախների) ոչնչացման, նաև մարտերում համազորային զորամասերին ու միավորումներին կրակով աջակցելու և ուղեկցելու համար (հրետան. նախապատրաստություն): Դասակարգվում է՝ ըստ նշանակման՝ վերգետնյա և զենիթ., ըստ սպառազինության՝ թնդանոթ., հաուբից., ռեակտիվ., հակատանկ., լեռն. և ականանետ., նավային և առափնյա: 2. Հրետան. սպառազինության և մարտ. տեխնիկայի (հրանոթներ և կայանքներ, տեղաշարժման միջոցներ, կրակի կառա–

վարման սարքեր և թիրախ. սարքավորումներ, հետախուզման և հրաձգության ապահովման միջոցներ) առարկաների համախումբ: 3. Հրետան. սպառազինության և մարտ. տեխնիկայի կառուցվածքն ու շահագործումը, կիրառման եղանակները և հրաձգության տեսությունն ուսումնասիրող գիտ-յուն:

ՀՐԹԻՌ, 1. *ռեակտիվ շարժիչով* թռչող ապարատ:

2. Ռեակտիվ շարժիչով մարտ. արկ: Լինում են բալիստիկ և թևավոր, կառավարվող և չկառավարվող, հակատանկ., զննիթ., մարտավար., օպերատիվ-մարտավար. և ռազմավար.: 3. Հրավառությունների և ազդանշան. սարքավորումների համար կիրառվող հրատեխ. (լուս.) արկից և ոչ մեծ վառոդ. ռեակտիվ շարժիչից բաղկացած սարք: 4. Ստորջրյա թևերով ոչ մեծ արագընթաց նավ:



Բաղադրյալ (եռաստիճան) հրթիռ. 1. հեղուկային հրթիռային շարժիչ, 2. կայունարար, 3. վառելիքի բաք, 4. թթվածնի բաք, 5. կառավարման ապարատուրային համակարգող ցուցասարքային հատվածամաս, 6. օգտակար բեռ, 7. գլխամասային շրջահոսիչ

ՀՐԹԻՌԱԿԻՐ, ինքնաթիռ, նավ կամ սուզանավ, որը նախատեսված է հրթիռառմբային, այդ թվում՝ միջուկ. հարվածներ հասցնելու համար:

ՀՐԹԻՌԱՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԶԵՆՔ, զենք, որի ոչնչացման միջոցը *միջուկային լիցքն* է, իսկ թիրախին հասցնելու միջոցը՝ *հրթիռը*:

ՀՐԹԻՌԱՅԻՆ ԶԵՆՔ, ժամանակակից զենքի տարբեր տեսակների համախումբ, որոնք թիրախներին են հասցվում *հրթիռի* կամ *ռեակտիվ շարժիչի* քարշի ուժով շարժվող կրողի միջոցով: Լինում են վերգետնյա, ավիացիոն, հակաօդ., հակատիեզ., ծով. միջմայրցամաք. (միջին, օպերատիվ-մարտավար., մարտավար. հեռ-յունների), անշարժ և շարժ., բալիստիկ՝ ներորբալիստիկ, օդ., ստորջրյա, հակատանկ., հակաինքնաթիռ., հականավ., հակատեղորոշիչ, հակատիեզ.:

ՀՐԹԻՌԱՅԻՆ ՇԱՐԺԻՉ, միայն շարժվող սարքում եղած նյութերն ու էներգիայի աղբյուրներն օգտագործող *ռեակտիվ շարժիչ*: Կախված ռեակտիվ շիթի էներգիայի փոխակերպվող էներգիաների տեսակից՝ Հ. շ-ները լինում են հեղուկ, պինդ վառելիք., հիբրիդ., էլ. և միջուկ.: Ըստ նշանակման դասակարգվում են՝ թափառքային, արգելակային, կառավարող, ճշտող, կողմնորոշող, կայունացնող են: Տես նաև *Արեգակնային առագաստ*:

ՀՐԹԻՌԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԵՐ, քարշուժ ստեղծելու նպատակով *հրթիռային շարժիչներում* որպես էներգիայի աղբյուր և բանող մարմին օգտագործվող նյութ կամ նյութերի համախումբ: Հիմն. տեսակներն են՝ հեղուկ (վառելիքը՝ հեղուկ ջրածին, կերոսին կամ երկմեթիլհիդրազին, օքսիդիչը՝ հեղուկ թթվածին կամ երկազոտի քառօքսիդ), պինդ (վառելիքը՝ նիտրոցելյուլոզի հիմքով վառոդներ, օքսիդիչը՝ ամոնիումի պերքլորատ):

ՀՐԿԵՋ (Ալոյան Սիրական, 1876–1943), աշուղ: Հեղինակ է խոհախրատ., հայրենասիր. երգերի («Արբեցություն», «Հայրենիք», «Սիրելիք, ես գիտեմ»), նաև հանելուկների, դաստաների:

ՀՐԿԻԶԱԳՈՒՆԴ, *բրանդկուգել* (< գերմ. Brand – հրդեհ և Kugel – միջուկ), բոցավառվող բաղադրությամբ լցոնված հարթափող հրետանու հրկիզող արկ: Օգտագործվել է XVIII –XIX դդ.-ում: Ստեղծվել է Սաքսոնիայում XVIII դ.-ում:

ՀՐՇԵՋ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, 1. պետ. և հաս. միջոցառումների համակարգ՝ մարդկանց կյանքը, պետ. և հաս. սեփականությունը և քաղաքացիների անձն. գույքը կրակից պահպանելու նպատակով: 2. Հրդեհների կանխարգելման և դրանց դեմ պայքարի միջոցառումներ իրականացնող կազմ-յուն:

ՀՐՇԵՋ ՏԵԽՆԻԿԱ, (տեխ.), միջոցներ, որոնք նախատեսված են մարդկանց հրդեհից փրկելու, նյութ. արժեքները և բնական հարստությունը պահպանելու համար: Դրանք են՝ հրշեջ ավտոմեքենաները (պոմպակայաններ, ավտոտանրողություններ, հրշեջ ամենագնացներ, հրշեջ աստիճաններ, ավտոամբարձիչներ, ծխահեռացման ավտոմեքենաներ ևն), հրշեջ գնացքները, նավերը, ուղղաթիռներն ու ինքնաթիռները, հրշիջման և ազդանշանման սարքերը, կրակմարիչները, ջրանոթները ևն:

ՀՐՇԵՋ-ԿԻՐԱՌԱԿԱՆ ՍՊՈՐՏ, *հրդեհների* մարման ժամանակ անհրաժեշտ հմտությունների, ունակությունների, հնարքների համալիր կատարման մրցումներ (արգելքների հաղթահարում, հրշեջ-տեխ. միջոցներից օգտվելու հմտություն ևն):

ՀՐՈ ԵՐԿԻՐ (Tierra del Fuego), կղզեխումբ Հվ. Ամերիկայի հվ.-ում: Մայրցամաքից բաժանվում է Մագելանի նեղուցով: Արլ. մասը պատկանում է Արգենտինային, արմ-ը՝ Չիլիին: Տարածքը՝ մոտ 72 հզ. *կմ²*, բն.՝ 251 հզ. (2006): Ընդգրկում է Հ. Ե. (կամ Իսլա Գրանդե, 48 հզ. *կմ²*) գլխ. կղզին և բազմաթիվ այլ կղզիներ: Հս-արլ.-ում բլրամորենային հարթավայր է, հվ. և արմ. մասերում՝ ֆյորդներով խիստ մասնատված Անդյան լ-ներ: Կլիման բարեխառն է: Շատ են ճահիճները: Զբաղվում են անասնապահությամբ և ձկնորսությամբ: Հս-ում արդյունահանվում է նավթ և գազ: Գլխ. բնակավայրը՝ Ուշուայա (մոլորակի ամենահվ. քաղաքը): Հ. Ե. հայտնագործել է Ֆ. *Մագելանը* 1520-ին և այնտեղ երևացող կրակների առատության պատճառով անվանել Հ. Ե.:

ՀՐՈՆԵԿՐԱՅԻՆԵՐ, *Հրո երկրի* հիմն. բնակչությունը: Ներառում է 3 ինդկացի ցեղեր (ալկալուֆներ, յագաններ, օնա): Ալկալուֆներն ու յագանները հիմնականում զբաղվում են կակղամորթների, ծով. գազանների (ծովառյուծ, փոկ, կետ), ջրասամույրի ևնի, օնա ցեղը՝ աղվեսների, բադերի որսով: Հ-ի դավանանքում գերակշռում են շամանականությունն ու կախարդությունը: Վերացման եզրին են:

ՀՐՈԶՆԻ (Hrozný) Բեդրժիխ (1879–1952), չեխ արևելագետ, խեթագետ: Չեխոսլովակիայի ԳԱ ակադ.: Փարիզի համալսարանի պրոֆ. (1919): Վերծանել է խեթ. սեպագիր արձանագրությունները և բացահայտել խեթ-ի հնդեվրոպ. բնույթը: Ընդհանրացրել է Հին Արևելքի պատմությունը, բացատրել Առաջավոր Ասիայի ժողդ-ների ծագումնաբանության որոշ հարցեր:

ՀՐՈՍՎԻԹԱ, *Ռոսվիթա* (Hroswitha, Roswitha), Հանդերսհեյմսկայա (մոտ 935–մոտ 975), գերմանացի միանձնուհի, գրող: Գրել է լատ.: Հեղինակ է կրոն. պոեմների (սրբերի կյանքին վերաբերող սյուժեներով), «Օգտոնի արարքները» (968) պատմ. ժամանակագրության:

ՀՐՈՏԻՑ, հայկ. հեթանոս. տոմարի 12-րդ ամսվա անվանումը: Ենթադրվում է, որ առաջացել է «հուր» բառից: Անշարժ (Սարկավագադիր) տոմարով Հ-ի 1-ը համապատասխանում է հուլիսի 7-ին:

ՀՐՎԻԺԱԿՆԵՐ (աստղագիտ.), *արևապսակում* մինչև հազարավոր *կմ* երկ-յամբ վիթխարի պլազմային գոյացություններ, որոնց խտությունն ավելի մեծ է, իսկ ջերմաստիճանը՝ ավելի փոքր, քան դրանց շրջապատող արևապսակի պլազմայինը: Հ-ի կյանքի տևողությունը մի քանի րոպեից մինչև 1 ամիս է:

ՀՈՒ ՅԱՈԲԱՆ (1915–1989), Չինաստանի կոմկուսի ԿԿ գլխ. քարտուղար՝ 1980–87-ին (1981–82-ին, միաժամանակ՝ նախագահ):

ՀՈՒԱ ԳՈՖԵՆ, **Սու Չժու** (1921–2008), Չինաստանի կոմկուսի ԿԿ նախագահ՝ 1976–81-ին, ՉԺՀ Պետխորհրդի (1976–80), ՉԺՀ Կենտր. ռազմ. խորհրդի (1976–81) նախագահ:

ՀՈՒԱՅՀԵ, գետ Չինաստանի արլ.-ում: Սկիզբ է առնում Տունբոշան լ-ներից, հոսում Չին. մեծ հարթավայրով: Երկ.՝ 813 *կմ*, ավազանը՝ 187 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 1000 *մ³/վ*: Ստորին հոսանքում նավարկելի է, Մեծ ջրանցքով միացված է Յանցզի և Հուանհե գետերին:

ՀՈՒԱՅՆԱՆ, ք. Չինաստանի Անհոյ պրովինցիայում՝ Հուանհե (Դեղին) գետի ափին: Բն.՝ 1,6 մլն (2010): Քարածխ. ավազանի կենտրոն է: Կան մետաղաձուլ., մեքենաշին., քիմ., թղթի արդ-յան և այլ ձեռն-ներ:

ՀՈՒԱՆ ԲԻՆՀՈՒՆ (կեղծանունը՝ Յույ-սին, 1864–1955), չին գեղանկարիչ: Ստեղծագործել է *գոհուայի* եղանակով, գեղանկարչության մեջ զարգացրել է չին. բնանկարի դաս. միջոցները («Տյանթայշան լեռները», 1928): Հայտնի էր նաև որպես գեղագիր, բանաստեղծ, արվ-ի տեսաբան:

ՀՈՒԱՆ ՅԱԶՅԻՆ (1904–1995), չին երկրաբան: ՌԳԱ արտ. անդամ (1988): Աշխ-ները վերաբերում են Չինաստանի երկրբ-յան և տեկտոնիկայի հարցերին: Հեղինակ է «Չինաստանի գլխավոր կառուցվածքային տարրերը», «Թետիսի էվոլյուցիան Չինաստանի սահմաններում և նրա հարակից տարածքներում» մենագրությունների:

ՀՈՒԱՆՀԵ, **Դեղին գետ**, Չինաստանի արլ.-ում: Սկիզբ է առնում Տիբեթի բարձրավանդակի արլ.-ից, հոսում Հետաո հարթավայրով, Լյոսային սարավանդով, Չին. մեծ հարթավայրով և թափվում Դեղին ծովի Բոհայվան ծոցը՝ առաջացնելով դելտա: Երկ.՝ 4845 *կմ*, ավազանը՝ 771 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 2000 *մ³/վ*: Առանձին հատվածներում նավարկելի է: Հ-ի ափին են Լանչժոու, Բաոտոու, Լոյան, Չժենչժոու, Կայֆին, Յզինան խոշոր ք-ները:

ՀՈՒԱՆՇԻ, ք. Չինաստանի Հուբեյ պրովինցիայում, նվինգսո Յանցզի գետի ափին: Բն.՝ 700 հզ. (2011): Մոտակայքում արդյունահանվում են երկաթաքար, գունավոր մետաղներ, կրաքար, ածուխ:

ՀՈՒԲԵՅ, պրովինցիա Կենտր. Չինաստանում: Տարածքը՝ 187 հզ. *կմ²*, բն.՝ 58 մլն (2014): Վարչ. կենտրոնը՝ *Ուհան*:

ՀՈՒԲԵՐ (Huber) Ռոբերտ (ծ. 1937), գերմանացի կենսաքիմիկոս: Աշխ-ները վերաբերում են իմունոգլոբուլինների ռենտգենակառուցվածք. վերլուծությանը և կառուցվածքի վերծանմանը: Հաստատել է (Յ. *Դայզենհոֆերի* և Հ. *Միխելի* հետ) ծիրանագույն ոչ ծծմբային բակտերիաների լուսասինթեզող ապարատի հիմն. բաղադրիչի՝ հակազդող կենտրոնի կառուցվածքը: Նոբելյան մրց. (1988, Յ. Դայզենհոֆերի և Հ. Միխելի հետ):

ՀՈՒԲԵՐ Վոլֆ (մոտ 1485–1553), Վերածննդի շրջանի ավստրիացի գեղանկարիչ, գրաֆիկ: Հեղինակ է կրոն. բանաստեղծ. («Մոգերի երկրպագությունը», 1512, «Փախուստ Եգիպտոս», 1525–30, ևն) պատկերների և բնանկարների, գծանկարների և փայտափորագրությունների՝ լուսաստվեր. աստիճանավորման մեղմությամբ:

ՀՈՒԲԼԻ ԴՀԱՐՎԱՐ (Hubli–Dharwad), ք. Հնդկաստանի Կառնատակա նահագ-ում: Բն.՝ 1,3 մլն (2011): Կան մեքենաշին., թեթև, քիմ. արդ-յան ձեռն-ներ:

ՀՈՒԳԵՆԲԵՐԳ (Hugenberg) Ալֆրեդ (1865–1951), գերմանացի ձեռնարկատեր, Համագերմ. միության (1891) կազմակերպիչներից: 1920-ական թթ-ից ֆինանսավորել է Գերմանիայի նացիոնալ-սոց. կուս-յանը: 1928–33-ին՝ ծայրահեղ աջակողմյան Գերմ. ազգ. ժողովրդավար. կուս-յան նախագահ: Հիտլերի կառ-յունում՝ սննդի և գղտ-յան նախարար (1933):

ՀՈՒԳԵՆՈՏՆԵՐ, կալվինիզմին հարողներ Ֆրանսիայում XVI–XVIII դդ-ում: Հ-ի և կաթոլիկների հակամարտությունը վերաճել է կրոն. պատերազմների:

ՀՈՒԳՈ ԿԱՊԵՏ (Hugues Capet, մոտ 940–996), Ֆրանսիայի թագավոր՝ 987-ից: Կապետինգյան հարստության հիմնադիրը:

ՀՈՒԴԱ, Հուդա Իսկարիովտացի, Նոր կտակարանում Հիսուս Քրիստոսի 12 առաքյալներից, որը մատնել է իր ուսուցչին 30 արծաթով: Փխր. իմաստով՝ մատնիչ, դավաճան:

ՀՈՒԴԱՅԱԾԱՌ (Cercis), **արճվան, լուսնատերևի, լանտորի**, բակլազգիների ընտանիքի տերևաթափ ծառերի կամ թփերի ցեղ: Հայտնի է 7 տեսակ, ՀՀ-ում (վայրաճ)՝ 1՝ Հ. Գրիֆիթի: Հանդիպում է Սյունիքի մարզում (Շվանիձոր և Նյուվադի գ-երի շրջակայքում), բարձր.՝ 5–7 մ: Ծաղկում է գարնանը՝ մինչև տերևների բացվելը: Գեղազարդիչ է. կիրառվում է կանաչապատման մեջ:

ՀՈՒԴԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, հնագույն միաստված կրոն. սկզբնավորվել է մ. թ. ա. I հզ-ամյակում *Պաղեստինում*: Հետևորդները հավատում են *Յահվեին* (միակ Աստված, Տիեզերքի արարիչ և տիրակալ), հոգու անմահությանը, հանդերձյալ կյանքին, փրկչի գալստյանը, հրեաների աստվածընտրյալ ժողդ լինելուն (ժողդ-ի ուխտը Աստծու հետ, որտեղ Նա հանդես է գալիս իբրև աստված. հայտնության կրող): Հուդայականները իրավունքի կամ հավատքի աղբյուր (**Հալախա–Օրենսգիրք**) են համարում Սբ գրքերը: Սրբազան գրքերը երկուսն են՝ **Թանախ–Սբ գիրք** (գրավոր Թորա) և **Թալմուդ** (բանավոր Թորա): Հալախան կազմակերպում է հուդայականների կյանքի գրեթե բոլոր ոլորտները՝ ներառյալ ընտանեկան, քր., քաղաքաց. ևն: Հ-յան մեջ տարածված են միստիկ ուսմունքները (*կաբալա*, խասիդիզմ): Ունի շուրջ 18 մլն հետևորդ (1/3-ը՝ ԱՄՆ-ում):

ՀՈՒԴՋՈՆ (Հադսոն, Hudson) Հենրի (1550–1611), անգլիացի ծովագնաց: 1607–11-ին նավարկել է արկտիկ. ծովերում՝ Ատլանտյանից Խաղաղ օվկ. տանող հս-արլ. և հս-արմ. ծով. ուղիները գտնելու նպատակով: Հասել է մինչև Գրենլանդիա, հայտնագործել իր անունով կոչված գետաբերանը, համանուն նեղուցն ու ծոցը: 1611-ին, վերադարձի ճանապարհին, նավի անձնակազմն ապստամբել է, նրան՝ որդու և 7 նավաստու հետ, նավակով թողել են բաց ծովում, որտեղ նրանք անհետ կորել են:

ՀՈՒԴՋՈՆ, գետ ԱՄՆ-ում: Սկիզբ է առնում Ադիրոնդակ լ-ների (Ապալաչներ) սառցադաշտ. լճերից և թափվում Ատլանտ. օվկ-ի Լոուեր Բեյ ծոցը: Երկ.՝ 520 *կմ*, ավազանը՝ 35 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 630 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է գետաբերանից մինչև Թրոյ ք-ը: Նավարկելի ջրանցքներով միացված է Էրի, Օնտարիո և Շամպլեյն (Սբ Լավրենտիոս գետի համակարգ) լճերին: Գետաբերանում է Նյու Յորք ք-ը: Կոչվել է Հ. *Հուդզոնի* պատվին:

ՀՈՒԴՋՈՆԻ ԾՈՑ (Hudson Bay), Հս. սառուցյալ օվկ-ում: *Հուդզոնի նեղուցով* կապված է Ատլանտ. օվկ-ին: Մակերեսը՝ 819 հզ. *կմ*^{2}, առլգն խոր.՝ 301 *մ*: Մակընթացությունը կեսօրյա է (ալիքի բարձր.՝ մինչև 7,9 *մ*): Զարգացած է ձկնորսությունը: Նվինգստոները՝ Չերչիլ, Պորտ Նելսոն: Հայտնագործել է Հ. *Հուդզոնը* 1610-ին:

ՀՈՒԴՋՈՆԻ ՆԵՂՈՒՑ (Hudson Strait), Հս. Ամերիկայի հս-արլ. ափին, Լաբրադոր թ-կղզու և Բաֆինի Երկրի միջև: *Հուդզոնի ծոցը* միացնում է Ատլանտ. օվկ-ին: Երկ.՝ մոտ 800 *կմ*, լայն.՝ 115–240 *կմ*, խոր.՝ 200–600 *մ*: Տարվա մեջ մոտ 8 ամիս ծածկվում է լողացող սառույցներով: Հ. ն-ում առաջինը եղել է Մ. *Կարտյեր* 1517-ին: Կոչվել է Հ. *Հուդզոնի* անունով:

ՀՈՒԴԻԹ, Յուդիթ, աստվածաշնչ. հրեա հերոսուհի: Աշշուրա-բաբել. աշխարհակալ թագավոր Նաբուգոդոնոսոր I-ը, մ. թ. ա. VI դ-ի սկզբին նվաճելով Հրեաստանը, պաշարել է Երուսաղեմը: Հ. թափանցել է թշնամու ճամբար, գայթակղել, ապա գլխատել է Հողոփեռնես զորավարին, գլուխը ցցի հանելով քաղաքի պարսպին՝ հրեական բանակին հնարավորություն է տվել հարձակվելու և հաղթելու դեպքից զարհուրած և խուճապահար թշնամուն:

ՀՈՒԴՈՆ (Houdon) Ժան Անտուան (1741–1828), ֆրանսիացի քանդ.: Հեղինակ է XVIII դ-ի ֆրանս. մեծ հեղ-յան գործիչների, Լուսավորության ժամանակաշրջանի ներկայացուցիչների դիմաքանդակների [Ժ-Ժ. Ռուսոյի (1778), Օ. Գ. Միրաբոյի (1791 և 1800), կիսանդրիների, Վոլտերի արձանի (1778 և 1781)]:

ՀՈՒԼԱՎՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ, կառավարող հարստություն մոնղ. իլխանությունում (1256–XIV դ-ի կես): Կոչվել է հիմնադիր՝ *Հուլավու* խանի անունով: Իշխել է Իրանում, Հայաստանում և Առաջավոր Ասիայի մեծ մասում: Հ. հ-յան ամենահայտնի ներկայացուցիչը Ղազան խանն էր, որի օրոք վերացել է ձևական կախումը մոնղ. կենտր. պետությունից:

ՀՈՒԼԱՎՈՒ, Հուլաղու (1217–1265), Հուլավյան հարստության և պետության (իլխանություն) հիմնադիրը՝ 1256-ից: *Հինգհս խանի* թոռը:1256-ին գրավել է Իրանը, Իրաքը, 1257-ին՝ Հայաստանը, Վրաստանը, Աղվանքը ևն: 1258-ին նվաճել է Բաղդադը և վերացրել Աբբասյան խալիֆությունը:

ՀՈՒԼԻԱՆՈՍ ՈՒՐԱՑՈՂ, Ֆլավիոս Կլավդիոս (Flavius Claudius Julianus Apostata, 331–363), Հռոմի կայսր՝ 361-ից: Ստացել է քրիստ. կրթություն: Դառնալով կայսր՝ վերադարձրել է հեթանոս. տաճարներից խլված ունեցվածքը, իշխանությունից հեռացրել քրիստոնյաներին: Քրիստ. եկեղեցին նրան անվանել է «Ուրացող»:

ՀՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ, տես *Կեսար*:

ՀՈՒԼԻՈՍ–ԿԼԱՎԴԻՈՍՆԵՐ, Հին Հռոմի կայսեր. 1-ին հարստությունը՝ 14–68-ին (*Օգոստոսի* սերունդները՝ արյունակց. կապով կամ որդեգրությամբ): Ներկայացուցիչներն էին *Տիբերիոսը, Կալիգուլան, Կլավդիոսը, Ներոնը*: Հ–Կ-ի օրոք ավելի է ուժեղացել իշխանության կենտրոնացումը: Հենվել են բանակի և բյուրոկրատ. ապարատի վրա, վարել նվաճող. քաղ-յուն:

ՀՈՒԼԻՄՅԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, Ֆրանսիայի թագավոր Լուի Ֆիլիպի կառավարման ժամանակաշրջանը՝ Հուլիսյան հեղ-յունից (1830) մինչև Փետր. հեղ-յունը (1848):

ՀՈՒԼՅԱՆ ՏՈՄԱՐ (հին տոմար), արեգակն. օրացույց, որը մ. թ. ա. 45-ի հունվ. 1-ից ներմուծվել էր Հուլիոս *Կեսարի* ռեֆորմով (այստեղից՝ անվանումը): Հ. տ-ով տարվա տևողությունը 365 միջին արեգակն. օր էր. յուրաքանչյուր 4-րդ (նահանջ) տարի ուներ 366 օր: Հ. տ. ընդունել է քրիստ. եկեղեցին մ. թ. 325-ին Նիկիայի եկեղեց. ժողովում, որից հետո քրիստոնյա բոլոր ժողդ-ներն ընդունել են այն: Հաշվարկի սկիզբը համարվում է I դ-ի 1-ին օրը: Այդ տարեթվին հաջորդող բոլոր տարիներն անվանել են նոր թվականության (մ. թ.) կամ Քրիստոսի ծնունդից հաշված տարիներ, նախորդող տարիները՝ մ. թ. ա. կամ Ք. ծ. ա. տարիներ: Հ. տ-ի տարվա տևողությունը մեծ է արևադարձ. տարվա տևողությունից 0,0078 միջին արեգակն. օրով, այդ պատճառով Հ. տ. յուրաքանչյուր 128 տարի 1 օրով հետ էր մնում ժամանակի աստղագիտ. հաշվարկից, ինչը պահանջեց տոմարի հետագա բարեփոխում: Տես նաև *Գրիգորյան տոմար*:

ՀՈՒԽԵԼ (Huchel) Պետեր (1903–1981), գերմանացի բանաստեղծ: Բավարիայի գեղեցիկ արվ-ների, Գերմանիայի լեզվի և պոեզիայի ակադ-ների պատվ. անդամ: Բանկար. և փիլ. քնարերգության վարպետ է («Բանաստեղծություններ», 1948, ևն): Հեղինակ է նաև «Հաշված օրեր» (1972) ժող-ի:

Ավստրիայի Պետ. (1972), Անդրեաս Գրիֆիուսի անվ. գր. (1974) և այլ մրց-ներ:

ՀՈՒԿ (Hooke) Ռոբերտ (1635–1703), անգլիացի բնախույզ: Լոնդոնի թագավոր. ընկ-յան անդամ (1603, քարտուղար՝ 1677–83-ին): 1659-ին պատրաստել է օդ. պոմպը: Ք. *Հյուգենսի* հետ հաստատել է (1600) ջերմաչափի հաստատուն՝ սառույցի հալման և ջրի եռման կետերը: Կատարելագործել է բարոմետրը, հայել. աստղադիտակը, դիտախողովակն օգտագործել անկյուններ չափելու համար, նախագծել քամու ուժը չափող սարք, շրջանը մասերի բաժանող մեքենա ևն: 1660-ին սահմանել է իր անունով հայտնի՝ *Հուկի օրենքը*: Հ. արտահայտել է երկն. մարմինների՝ իրար ձգելու գաղափարը և տվել *մոլորակների* շարժման ընդհ. պատկերը: Կռահել է Ի. *Նյուտոնի* տիեզ. ձգողականության օրենքը, ենթադրել, որ մոլորակները պետք է շարժվեն էլիպսներով: Հ. կողմնակից էր

լույսի ալիքային տեսությանը և վիճարկում էր մասնիկային (կորպուսկուլային) տեսությունը, ջերմությունը համարել է նյութի մասնիկների մեխ. շարժման արդյունք: Կատարելագործել է մանրադիտակը և բացահայտել հյուսվածքների բջջ. կառուցվածքը, ներմուծել «բջիջ» տերմինը:

ՀՈՒԿԵՐ (Hooker), անգլիացի բուսաբաններ՝ հայր և որդի. 1. **Ուիլյամ Ջեկսոն Հ.** (1785–1865), Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1837): Աշխ-ները վերաբերում են Անգլիայի, Աֆրիկայի, Ամերիկայի բուսաշխարհին: 2. **Ջոզեֆ Դալտոն Հ.** (1817–1911), Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1859), Լոնդոնի թագավոր. ընկ-յան անդամ (1847) և նախագահ (1873–78): Դարվինիզմի առաջին քարոզիչներից: Ջ. Բենտամի հետ առաջարկել է ծաղկավոր բույսերի կարգաբանությունը՝ հասցնելով մինչև ցեղերը (1862–83):

ՀՈՒԿԻ ՕՐԵՆՔ, եթե L երկ-յամբ և S լայնական հատվածքի մակերեսով ձողը ձգվում է F երկայն. ազդեցության ուժով, ապա նրա երկարացումը՝ $\Delta l = FL/ES$, որտեղ E-ն ***առաձգականության մոդուլն*** է (Յունգի մոդուլ):

ՀՈՒՀՀՈՏՈ, *Հույսույ* (Hūhéhāotè), ք. Չինաստանի հս-ում, Ներքին Մոնղոլիա ինքնավար շրջանի վարչ. կենտրոնը: Բն.՝ շուրջ 2 մլն (2010): Ունի համալսարան:

ՀՈՒՄԱՅՈՒՆ (1508–1556), Հնդկաստանի Մողոլ. կայսրության կառավարիչ՝ 1530–40-ին և 1555-ից: ***Բաբուրի*** որդին: 1540-ին Շեր խանը վտարել է Դելիից:

«ՀՈՒՄԱՅՈՒՆՆԱՄԵ» (Արքայական գիրք), միջնադար. իսլամ. գրկ-յան մի քանի երկեր (հիմնականում՝ պատմագր. բնույթի): «Հ.» են կոչվել 2 գործ՝ արձակ և չափածո, որոնք թագավոր ***Հումայունի*** վարքագրություններն են: «Հ.» վերնագրով հայտնի են «Քալիլա և Դիմնա»-ի թուրք. թարգմ-ը և Մոնդ-ի պարսկ. ձեռագրերից մեկում պահպանված իլխան. պետության հայտնի գործիչներ Ջուվեյնիի եղբայրներին նվիրված մի ընդարձակ չափածո գործ («ԲՄ», 1958, №4):

ՀՈՒՄԱՆԻԶՄ (լատ.՝ humanus – մարդկայնություն), մարդու անհատականությունն արժևորելը, նրա ազատ ու համակողմանի զարգանալու և ընդունակությունները դրսևորելու իրավունքը ճանաչելը, մարդու բարօրությանը նպաստելը: Հ. Վերածննդի դարաշրջանի աշխարհիկ ազատախոհությունն է, որը հակադրվել է ***սխոլաստիկային*** և եկեղեցու հոգևոր գերիշխանությանը, նաև արվ-ի, փիլ-յան, գրկ-յան, բնական և հաս. երևույթների արժևորման, մարդու էության բացահայտման և աշխարհիկ կյանքի իմաստավորման չափանիշը: Տարածվել է XIV–XV դդ-ում Իտալիայում (Ֆ. Պետրարկա, Լ. դա Վինչի և ուր.), Ֆրանսիայում (Ֆ. Ռաբլե), Անգլիայում (Վ. Շեքսպիր) և այլուր: Հայ իրականության մեջ Հ-ի ձևավորմանը նպաստել են հատկապես ***Պավլիկյան*** և ***Թոնդրակյան շարժումները***: Հ-ի գաղափարներն արտացոլվել են Ներսես Շնորհալու, Մկրտիչ Նաղաշի, Հովհաննես Թլկուրանցու, ավելի ուշ՝ Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Հ. Սվաճյանի և ուր. երկերում:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԻՐԱՎՈՒՆՔ, միջազգ. իրավունքի ճյուղ. միավորում է մարդու, ազգերի, ժողղ-ների իրավունքների հարցանքն ապահովող սկզբունքները, ինստ-ներն ու նորմերը: Հ. ի-ի կարևոր ենթաճյուղ է ռազմ. հակամարտությունների իրավունքը:

ՀՈՒՄԲՈԼԴՏ (Humboldt) Ալեքսանդր ֆոն (1769–1859), գերմանացի բնախույզ, աշխարհագետ, ճանապարհորդ: Բեռլինի ԳԱ (1800), Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. (1818) անդամ: Կ. Վ. ***Հումբոլդտի*** եղբայրը: Ուսումնասիրել է Եվրոպայի, Կենտր. և Հվ. Ամերիկայի տարբեր երկրների, Ուրալի, Սիբիրի բնությունը: Բույսերի աշխարհագրության և կենսաձևերի տեսության հիմնադիրներից: Հիմնավորել է վերընթաց գոտիականության գաղափարը, առաջադրել ընդհ. երկրագործության, կլիմայագիտ-յան հիմունքները: Մեծապես ազդել է էվոլյուցիոն զարգացման գաղափարների վրա և նպաստել բնագիտ-յան մեջ համեմատ. մեթոդների ընդունմանը:

ՀՈՒՄԲՈԼԴՏ Կառլ Վիլհելմ (1767–1835), գերմանացի բանասեր, փիլ., լեզվաբան: Ա. ֆոն ***Հումբոլդտի*** եղբայրը: Վ. Գյոթեի և Ֆ. Շիլլերի ընկերը: Բեռլինի համալսարանի հիմնադիրը (այժմ՝ Հումբոլդտի անվ.): Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. անդամ (1832): Լեզվի տիպաբանության սկզբնավորողը: Գերմ. դաս. հումանիզմի խոշորագույն ներկայացուցիչ: Հեղինակ է «Ֆրանսիական ժամանակակից ողբերգական թատրոնի մասին» (1800) և այլ աշխ-ների:

ՀՈՒՄԻՆԱԹՈՒՆԵՐ, մուգ գույնի նյութեր, որոնք մտնում են տորֆի (մինչև 60 %), գորշ ածխի (20–40 %), հողի (մինչև 10 %) կազմերի մեջ: Կառուցվածքը վերջնականապես հաստատված չէ: Բույսերի աճման խթանիչներ են, օրգանահանք. պարարտանյութերի, հորատման համար խառնուրդների բաղադրիչ:

ՀՈՒՄՈՐԱԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ, ֆիզիոլոգ. և կենսաքիմ. կենսընթացների համաձայնեցվածությունն օրգանիզմում: Իրականացվում է հեղուկ միջավայրերի (արյուն, ավիշ, հյուսվածք. հեղուկ) միջոցով՝ հորմոնների և նյութափոխանակության տարբեր նյութերի օգնությամբ:

ՀՈՒՄՈՐԵՍԿ (գերմ.՝ Humoreske), 1. (երաժշտ.) կատակային, երբեմն քնար. բնույթի երաժշտ. պիես (մոտ է ***սկերցոյին***): Դաշնամուր. Հ-ի հիմնադիրը Ռ. Շումանն է: 2. (Գրկ.) արձակ կամ չափածո զավեշտական մանրապատում:

ՀՈՒՄՈՒՍ (լատ.՝ humus – հող), **բուսահող,** հողի հարաշարժ համակարգ՝ կազմված անատոմ. հատկանիշները կորցրած, քայքայման և սինթեզի ենթարկված բուս. և կենդ. մնացորդների ամբողջությունից: Հողի մեջ նյութերի հիմն. բաղադրամասն է: Հողի վերին՝ արմատամերձ շերտում Հ-ի պարունակությունը տատանվում է 10–15 % և ավելի: Հ-ի հիմն. մասը կազմված է հումուս. նյութերից՝ ***հումինաթթվից***, ֆուլվոթթվից և հումինից: Հողում Հ-ի քանակի պարունակությամբ են պայմանավորված նրա մի շարք հատկանիշներ, այդ թվում՝ բերրիությունը: ՀՀ-ում կիսաանապատ. հողերը պարունակում են 1–2 %, շագանակագույն հողերը՝ 2–4 %, սևահողերը՝ 4,5–12 %, լ-մարգագետն. հողերը՝ 8–32 % Հ.:

ՀՈՒՅԶ, էմոցիա (ֆրանս.՝ emotion – հուզմունք, < լատ. emoveo – ցնցել), մարդու և կենդանու հոգեկան վիճակների տեսակ, զգացմունքների որոշակի, իրադր. դրսևորումներ (հաճույք, տհաճություն, սարսափ, ուրախություն, զայրույթ ևն), որոնք ունեն վառ արտահայտված սուբյեկտիվ բնույթ և զգացմունքայնության ու ապրումների բոլոր տեսակները: Հ-երի առաջացումը պայմանավորված է օրգանիզմի պահանջմունքների բավարարման (դրական Հ.) կամ անբավարարության (բացաս. Հ.) հետ: Տարբերակված և կայուն Հ-երը, որոնց հիմքում մարդու բարձրագույն սոցիալ. պահանջմունքներն են, կոչվում են ***զգացմունքներ*** (ինտելեկտուալ, գեղագիտ., բարոյական):

ՀՈՒՅՆԵՐ (ինքնանվանումը՝ էլինես), ժողղ, Հունաստանի (10.2 մլն) և Կիպրոսի (635 հզ., 2001) հիմն. բնակչությունը: Ապրում են նաև Իտալիայում (30 հզ.), Ալբանիայում (200 հզ.), Ֆրանսիայում (200 հզ.), Թուրքիայում (300 հզ.), Մեծ Բրիտանիայում (400 հզ.), Ավստրալիայում (340 հզ.), ԱՄՆ-ում (946,5 հզ.) և այլուր: Ընդհ. թիվը՝ 20 մլն (2010): Լեզուն՝ հուն.: Հավատացյալները հիմնականում ուղղափառ քրիստոնյա են:

ՀՈՒՅՆ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ, 1. **1897**, պատերազմ ***Կրետեի*** կղզու համար: Առիթը 1896-ին Կրետեում բռնկված ապստամբությունն էր, որի նպատակը թուրք. լծից ազատվելն էր և Հունաստանի հետ վերամիավորվելը: 1897-ի ապրիլի 17-ին Թուրքիան պատերազմ է հայտարարել Հունաստանին: Ավարտվել է մայիսի 17-ին՝ Դոմոկոսի մոտ հույների պարտությամբ: Դեկտ. 4-ին Կ. Պոլսում ստորագրվել է հաշտության պայմանագիր, որով Հունաստանը Թուրքիային է զիջել Թեսալիայի մի մասը՝ 55 *կմ*^{2} տարածք: 2. **1919–22**, Հունաստանի (որին օժանդակում էին Անտանտի երկրները) պատերազմը Թուրքիայի դեմ: Թուրքերը մի շարք խոշոր հաղթանակներ են տարել (Ինոնյուի մոտ՝ 1921-ի հունվ. 10-ին և մարտի 31-ին, Սակարիայի մոտ՝ 1921-ի օգոստ–սեպտ-ին, Դումուլպինարի մոտ՝ 1922-ի օգոստ. 30-ին) և մինչև 1922-ի սեպտ. 18-ն ազատագրել Անատոլիան:

ՀՈՒՅՆ–ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ (մ. թ. ա. 500–449, ընդմիջումներով), Պարսկաստանի և հուն. պոլիսների միջև: Հույներին հաջողվել է մի շարք խոշոր հաղթանակներ տանել Մարաթոնում (մ. թ. ա. 490), Սալամին կղզում (480), Պլատեայում (479), Միկալեի հրվանդանում (479), Սալամին ք-ում (Կիպրոս, 449): Պարսկաստանը զրկվել է Էգեյան ծովի, Հելլեսպոնտոսի և Բոսպորի առափնյա տիրույթներից, ճանաչել Փոքր Ասիայի հուն. պոլիսների անկախությունը:

«ՀՈՒՅՍԻՍ ԿԱՄՈՒՐՋ», ՀԿ, ստեղծվել է 1996-ին Երևանում: Նպատակը հաշմանդամություն ունեցող երեխաներին ու երիտասարդներին օգնելն է: Համագործակցում է ՄԱԿ-ի մանկ. հիմնադրամի, «Վորլդ Վիժն», «Առաքելություն Արևելք» միջազգ. կազմ-յունների, տարբեր բարեգործ. միությունների հետ: Ունի մասնաճյուղեր ՀՀ մարզերում և Արցախում: Ունի գեղ. և արհեստագործ. խմբակներ:

ՀՈՒՆԱ–ԲԱԿՏՐԻԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (մ. թ. ա. մոտ 250–140/130), ստրկատիր. պետություն Միջին Ասիայում: Առաջացել է Սելևկյանների պետությունից անջատումով: Ընդգրկել է Բակտրիան, Սողդիան, Մարգիանան ևն, մ. թ. ա. 190–180-ին՝ նաև ժամանակակից Աֆղանստանի և Հս. Հնդկաստանի որոշ շրջաններ: Կործանվել է ապստամբությունների և քոչվորների հարձակումների հետևանքով:

ՀՈՒՆԱԲԱՆ ԴՊՐՈՅ, V դ-ի կես–VIII դ-ի սկզբի թարգմ., գիտ., կրթ-լուսավոր. ուղղություն Հայաստանում: Նպատակն

աշխարհիկ գիտելիքը զարգացնելն էր: Հիմքում գիտ-յունների անտիկ դասակարգումն էր (հատկապես՝ արիստոտելյան) և ուս. ծրագիրը: Հունարանները (Դավիթ Քերական, Մովսես Խորենացի, Դավիթ Անհաղթ և ուր.) թարգմանել են Դիոնիսոս Թրակացու «Արուեստ քերականութեան» երկը, «Գիրք պիտոյից» հռետոր., նաև տրամաբ., փիլ., բնափիլ. և այլ բնույթի աշխ-ներ (շուրջ 60): Հայաստանում ևս Հ. դ. արմատավորվել է և զարգացել: Այն յուրացրել և հայ-ով տարածել է անտիկ տես. ժառանգությունը: Որոշ թարգմանություններ, որոնց բնագրերը չեն պահպանվել, ունեն բնագրային արժեք: Հայ. թարգմանությունները (III–IV դդ.) իրենց ճշգրտությամբ հնարավորություն են տալիս վերականգնելու նախն. հուն. տեքստերը: Ստեղծվել է ինքնատիպ պատմ., փիլ., քեր., բնափիլ. հարուստ գրկ., մշակվել համապատասխան գիտ. տերմինաբանություն (տես *Հունաբան հայկրնն*): Զարգացել է նաև ուսումնակրթ. համակարգը:

ՀՈՒՆԱԲԱՆ ՀԱՅԵՐԵՆ, *հունաբան դպրոցի* թարգմանությունների լեզուն, որն աչքի է ընկնում հուն-ի նմանությամբ (պատճենումով) ստեղծված լեզվ. բազմաթիվ հատկանիշներով: Հունաբանները քերական. կառուցվածք են ներմուծել քերական. սեռը, երկակի թիվը, հոլովման ու խոնարհման որոշ արհեստ. ձևեր, բազմաթիվ նախածանցներ, որոնք, հայ-ին խորթ լինելով, հետագայում մերժվել են:

ՀՈՒՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ 1821–29, Մեծ հեղափոխություն, հույն ժող. ազատագր. պայքարը թուրք. լծի դեմ: Սկսվել է մարտի 25 (ապրիլի 6)-ին (այդ օրը հայտարարված է Հունաստանի անկախության օր) և ընդգրկել ողջ Մորեան, Մայրցամաք. Հունաստանն ու Էգեյան ծովի կղզիների մի մասը: 1822-ի հունվ-ին Պիադայում հավաքված Ա.Ժ-ն հռչակել է Հունաստանի անկախությունը և ընդունել ժողովրդավար. սահմանադրություն: 1825-ի փետր-ին Մահմուդ II սուլթանին օգնության է եկել եգիպտ. բանակը՝ Իբրահիմ փաշայի գլխավորությամբ: Հունաստանին օգնության եկած անգլո-ռուս-ֆրանս. նավատորմը 1827-ի հոկտ. 8(20)-ին Նավարինի ծովամարտում ջախջախել է թուրք-եգիպտ. նավատորմը: 1829-ի *Անդրիանուպոլսի հաշտության պայմանագրով* Թուրքիան ճանաչել է Հունաստանի ինքնավարությունը: 1830-ին Հունաստանը պաշտոնապես դարձել է անկախ պետություն:

ՀՈՒՆԱԿԱՆ ԳԻՐ, տառահնչյուն. (այբբենական) գիր. առաջացել է փյունիկյան գրից մ. թ. ա. XIX–XVIII դդ.-ում. օգտագործել են հին հույները: Հնագույն արձանագրությունը մ. թ. ա. VII դ.-ից է: Սկզբում գրվել է աջից ձախ, ապա՝ պարուրաձև, ավելի ուշ՝ ձախից աջ: Հիմք է դարձել մի շարք գրերի ստեղծման համար:

ՀՈՒՆԱԿԱՆ ԿՂԶԵԽՈՒՄԲ, լեռն. կղզիների խումբ Էգեյան ծովում (Հունաստան): Ներառում է Հս. և Հվ. Սպորադները, Էվբեոս, Խիոսը, Լեսբոսը, Կրետեն ևն: Ընդհ. տարածքը՝ շուրջ 20 հզ. *կմ*^{2}: Բարձր.՝ մինչև 2456 *մ* (Կրետե կղզում): Երկրաշարժաակտիվ հրաբխ. շրջան է:

ՀՈՒՆԱԿԱՆ ԿՐԱԿ, հրկիզող խառնուրդ (հավանաբար՝ խժերից, բևեկնախեժից, ծծմբից, բորակից և այլ նյութերից), գործածել են VII–XV դդ.-ում (առաջինը՝ հույները՝ 673-ին) ծովամարտերում և ամրոցների պաշարման ժամանակ: Հրազենի երևան գալով՝ կորցրել է նշանակությունը:

ՀՈՒՆԱ–ԿԱՖՈՒԱԿԱՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ, հուն. ուղղափառ եկեղեցու պաշտոն. անվանումը՝ որպես քրիստ. եկեղեցու առանձնահատուկ ճյուղ:

ՀՈՒՆԱՆ, պրովինցիա Կենտր. Չինաստանում: Տարածքը՝ 210 հզ. *կմ*^{2}, բն.՝ 67 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ *Չանշա:*

ՀՈՒՆԱՆՅԱՆ Արծվի Ստեփանի (1926–2010), գրականագետ, թատերագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1994): Հեղինակ է «Արդի հայ դրաման» (1964), «Դրամատուրգիա և թատրոն» (1980), «Դերենիկ Դեմիրճյանի դրամատուրգիան» (1988), «Հակոբ Պարոնյանը դրամատուրգ» (2003), «Պատմական արդարությունն ընդդեմ ուրացության» (2007), «Շեքսպիրյան հրավառություններ հայ բեմում» (2010) և այլ աշխ-ների:

ՀՈՒՆԱՆՅԱՆ Արտաշես Արմենակի (1922–1994), նկարիչ: Հեղինակ է «Քաղաք» (1960–61), «Հայաստան, երկիր դրախտավայր» (1970–88) նկարաշարերի, Դանտեի «Աստվածային կատակերգություն» (1961), Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» (1962) գրքերի նկարազարդումների, «Գեղարդ» (1963), «Խաչքար» (1968) գրաֆիկ. թերթերի, բանաստեղծությունների ժող-ի («Պահպանակ», 1994):

ՀՈՒՆԱՆՅԱՆ Հովհաննես Վաղարշակի (ծ. 1952), ՀՀ ոստիկանության գեն-լեյտ. (1999): 1994–2003-ին՝ ՀՀ ՆԳ փոխնախարար, 2003–13-ին՝ ՀՀ ոստիկանության պետի տեղակալ:

ՌԴ ՆԳ (2001), ՀՀ ԱԱ (2002) և Ոստիկանության (2003) պատվ. ծառայող:

ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի (2012), «Մարտական ծառայության համար» (1998), «Հասարակական կարգի գերազանց պահպանության» (2007) մեդալներ:

ՀՈՒՆԱՆՅԱՆ Սուրիկ Ալեքսանի (ծ. 1950), գյուղատնտես: Գղտ. գիտ. դ-ր (2014): Աշխ-ները վերաբերում են ՀՀ տեխնածին գոտիների հողերի բերրիության բարձրացմանը, էկոլոգիապես անվտանգ սննդամթերքի ստացման հարցերին:

ՀՈՒՆԱՍՏԱՆ (Ellada), **Հունաստանի Հանրապետություն**, պետություն Հվ. Եվրոպայում՝ Բալկանյան թ-կղզում և բազմաթիվ կղզիների վրա (խոշորները՝ Կրետե, Էվբեոս, Հոոդոս, Լեսբոս ևն): Սահմանակից է Ալբանիային, Մակեդոնիային, Բուլղարիային և Թուրքիային: Տարածքը՝ 132 հզ. *կմ*^{2}, բն.՝ 11 մլն (2013): Մայրաքաղաքը՝ *Աթենք*: Պետ. լեզուն՝ հուն.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Բաժանված է 7 վարչ. ապակենտրոնացված վարչակազմերի, 13 ծայրագավառների, ինչպես նաև Սուրբ լեռան վանական ինքնավարությունը: Հավատացյալների մեծ մասն ուղղափառ քրիստոնյա է: Անդամակցում է ՄԱԿ-ին, ԵՄ-ին, ՆԱՏՕ-ին, ԵԱՀԿ-ին, ԵԽ-ին, ԱՌԹՀԿ-ին ևն: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 18,9 հզ. ԱՄՆ դոլար է (2013): Արտահանում է ցիտրուս. մրգեր, դեղեր, էլ. սարքեր, պողպատ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթ, սպառող. ապրանքներ, նավեր, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ եվրո:

Հ-ի հին շրջանի պատմությունը տես *Հին Հունաստան*, միջնադարյանը՝ *Բյուզանդիա* հոդվածներում: XV դ-ից Հունաստանը եղել է օսմ. Թուրքիայի գերիշխանության տակ: 1821–29-ի հուն. հեղ-յան ժամանակ հռչակվել է անկախ պետություն (1822): 1829-ին *Ադրիանուպոլսի պայմանագրով* Թուրքիան ճանաչել է Հ-ի ինքնավարությունը: Մասնակցել է 1912–13-ի բալկան. պատերազմին, ԱՀՊ-ին (Անտանտի կողմում): 1924-ին հռչակվել է հանրապետություն: 1935-ին վերականգնվել է միապետությունը, 1936-ին հաստատվել է ռազմ. բռնապետություն: 1940-ին Հ. են ներխուժել իտալ. զորքերը (նույն թվականի նոյեմբ-ին վտարվել են): 1941-ին Հ. բռնազավթել է հիտլերյան Գերմանիան: Գեորգիոս II թագավորը հեռացել է երկրից: Ժողովրդաազատագր. բանակը (ԷԼԱՍ) 1944-ին ազատագրել է Հ-ի մայրցամաք. հատվածը: 1946-ին՝ հանրաքվեից հետո, գահը վերադարձվել է թագավորին: 1946–49-ին Հ-ում տեղի է ունեցել քաղաքաց. պատերազմ: 1967–74-ին իշխանությունն անցել է ռազմ. վարչակարգին, 1974-ին՝ քաղաքաց. կառ-յանը: Նույն թվականին հանրաքվեով վերացվել է միապետությունը: 1975-ի նոր սահմանադրությամբ Հ. հռչակվել է խորհրդարան. հանրապետություն՝ նախագահի գլխավորությամբ: Մինչև 1981-ը, 1989–93, 2004–09 և 2009–15-ին երկրի կառ-յունը

Հունական գիր

Մեծատառ	Փոքրատառ	Տառերի անունները հունարեն	լատինական տառադարձությամբ	հին հունական (աստիճյան)	նոր հունական (բյուզանդական)	Արտասանությունը հին հունական (աստիճյան)	նոր հունական (բյուզանդական)
Α	α	ἄλφα	alpha	ալֆա	ալֆա	a	a
Β	β	βῆτα	bēta	բետա	վիտա	b	v
Γ	γ	γάμμα	gamma	գամմա	ղամա	g, j, n	g (չփական) ɜ (միջատամնա յին Հայերեն)
Δ	δ	δέλτα	delta	դելտա	դելտա	d	d
Ε	ε	εἶ, ἒ(ἐ ψιλόν)	ĕpsīlon	էփսիլոն	էպսիլոն	ē	e
Ζ	ζ	ζῆτα	dzēta	ձետա	զիտա	dz	z
Η	η	ἦτα	ēta	էտա	իտա	i	i
Θ	θ	θῆτα	thēta	թետա	թիտա	th	th (միջատամնային խուլ)
Ι	ι	ἰῶτα	iōta	յոտա	յոտա	i	i
Κ	κ	κάππα	kappa	կապպա	կապպա	k	k
Λ	λ	λά(μ)βδα	la(m)bda	լամբդա	լամբդա	l	l
Μ	μ	μῦ	mu	մյու	մի	m	m
Ν	ν	νῦ	nu	նյու	նի	n	n
Ξ	ξ	ξεῖ(ξῖ)	xi	քսի	քսի	ks	ks
Ο	ο	οὖ, ὀ(ὸ μικρον)	ŏmĭcron	օմիկրոն	օմիկրոն	ŏ	o
Π	π	πεῖ (πῖ)	pi	պի	պի	p	p
Ρ	ρ	ῥῶ	rho	ռո	ռո	r	r
Σ	σ ς	σῖγμα (σίγμα)	sigma	սիգմա	սիդմա	s	s
Τ	τ	ταῦ	tau	տաու	տաֆ	t	t
Υ	υ	ὖ (ὗ ψιλον)	ŭpsĭlon	ուփսիլոն	իփսիլոն	ü, y	i
Φ	φ	φεῖ (φῖ)	phi	ֆի	ֆի	ph	f
Χ	χ	χεῖ (χῖ)	chi	խի	խի	ch	ch
Ψ	ψ	ψεῖ(ψῖ)	psi	փսի	փսի	ps	ps
Ω	ω	ὦ (ὦμέγα)	ōmĕga	օմեգա	օմեղա	ō	o

ձևավորել են Նոր ժողովրդավարություն, 2009–12-ին՝ Համահուն. սոց. շարժում, 2015-ից՝ Ձախ արմատականների դաշինք կուս-յունները: ԵՄ այն պետություններից է, որ համաշխ. ճգնաժամի (2008–10) պայմաններում ունեցել է տնտ. լուրջ դժվարություններ, որոնք ուղեկցվել են անընդմեջ համազգ. գործադուլներով, անկարգություններով ու ահաբեկչ. գործողություններով: 2015-ից տեղի են ունեցել արտահերթ խորհրդարան. ընտրություններ, հաղթել է Ձախ արմատականների դաշինքը (36,34 %):

Հայերը Հ–ում զանգվածաբար բնակություն են հաստատել V–VI դդ–ից: Բյուզ. կայսրության ժամանակաշրջանում (IV–XV դդ–ի 1-ին կես) հայերը կարևոր դեր են խաղացել Բյուզանդիայի հաս., ռազմ., քաղ., տնտ. և մշակութ. կյանքում: Համայնքը սկսել է ստվարանալ XIX դ–ի վերջից, որը շարունակվել է Մեծ եղեռնից ու հատկապես 1919–22–ի հույն–թուրք. պատերազմներից հետո: Տարբեր տարիների (1924–29, 1932–33, 1946–47) Հ–ից հայրենադարձել են հազարավոր հայեր: Հ–ում ներկայում բնակվում է 35–40 հզ. հայ, որոնք կենտրոնացած են Աթենքի և Պիրեայի շրջաններում, Սալոնիկում, Թրակիայում, Կրետե կղզում, Հոդոսում: Համայնքը ղեկավարում է Ազգ. վարչությունը: Գործում են 10 առաքել. (70–ամյա պատմություն ունի Աթենքի արվարձան Ֆիքսի Սբ Կարապետ եկեղեցին), 2 կաթոլիկ, 2 ավետարան. եկեղեցիներ, 4 ամենօրյա (Սոֆի և Լևոն Հակոբյան, Ա. և Ժ. Ճենազյան, Զավարյան ևն) և կիրակնօրյա դպրոցներ, հայ ազգ. կուս–ների տեղ. կազմ–յունները ևն: Լույս են տեսնում «Ազատ օր» (1945–ից), «Նոր աշխարհ» (1969–ից), «Ժողովրդային պայքար» (1982–ից), «Բոռունգք» (1991–ից), «Երիտասարդական կանչ» (1995–ից) պարբ–ները:

ՀՈՒՆԱՐԵՆ, *հույների* լեզուն, Հունաստանի և Կիպրոսի պետ. լեզուն (թուրք–ի հետ): Պատկանում է հնդեվրոպ. լեզվընտանիքի հուն. ճյուղին (մակեդոներենի հետ): Տարբերում են հինհուն. և նորհուն. լեզուներ: Գրի հիմքում հուն. այբուբենն է:

ՀՈՒՆԳԱՐԵՐԵՆ, *հունգարների* լեզուն, Հունգարիայի պետ. լեզուն: Պատկանում է ուգրո–ֆինն. լեզվաընտանիքի ուգր. ճյուղին: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՀՈՒՆԳԱՐԻԱ (Magyarország), **Հունգարիայի Հանրապետություն**, պետություն Արլ. Եվրոպայում: Սահմանակից է Սլովակիային, Ուկրաինային, Սերբիային, Սլովենիային, Ռումինիային, Խորվաթիային, Ավստրիային: Տարածքը՝ 93 հզ. *կմ*², բն.՝ 9,8 մլն (2013): Մայրաքաղաքը՝ *Բուդապեշտ:* Պետ. լեզուն՝ հունգ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Բաժանված է 7 վարչ. տարածաշրջանների: Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է: Անդամակցում է ՄԱԿ–ին, ԵՄ–ին, ԵԱՀԿ–ին, ՆԱՏՕ–ին, ԵԽ–ին, Առտհկ–ին ևն: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 13,9 հզ. ԱՄՆ դոլար է (2014): Արտահանում է մեքենաներ և սարքավորումներ, սննդամթերք, հանքանյութ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթ ու նավթամթերք, գազ, սննդամթերք, քիմիկատներ ևն: Դրամ. միավորը՝ ֆորինտ:

IX դ–ի վերջին և X դ–ի սկզբին ժամանակակից Հ–ի տարածքում հաստատվել են հունգ. ցեղերը: 1000–ից Հ. դարձել է թագավորություն: 997–ին Իշտվան I–ի օրոք ընդունվել է քրիստոնեությունը (կաթոլիկություն): 1526–ին Մոհաչի ճակատամարտից հետո Հ–ի զգալի մասն ընկել է օսմ. լծի տակ: 1683–99–ի ավստրո–թուրք. պատերազմից և հակահաբսբուրգյան ապստամբության ճնշումից հետո ամբողջ Հ. Հաբսբուրգների իշխանության տակ էր: 1848–49–ի հեղ–յունը (ղեկ–ներ՝ Լ. Կոշուտ, Շ. Պետեֆի ևն) ճնշվել է: 1867–ի ավստրո–հունգ. համաձայնագրով Հ. դարձել է երկմիասնական միապետության՝ Ավստրո–Հունգարիայի բաղկացուցիչ մասը: 1918–ից հանրապետություն է: ԵՀՊ–ի ժամանակ եղել է Գերմանիայի դաշնակիցը: 1945–ին խորհրդ. բանակն ազատագրել է Հ.: Կոմ. վարչակարգի դեմ 1956–ի ապստամբությունը ճնշվել է խորհրդ. զորքերի օգնությամբ: 1989–ին սահմանադր. փոփոխություններով Հ. հռչակվել է ժողովրդավար. և սոցիալ. պետություն: 2004–ին անդամակցել է ԵՄ–ին:

Հայերի առաջին խմբերը Հ–ում հաստատվել են միջնադարում և հետագայում ձուլվել են: Հայերն ակտիվորեն մասնակցել են 1686–ին Բուդա մայրաքաղաքը թուրքերից ազատագրելուն և 1848–49–ի հեղ–յանը (հայտնի են նահատակ Էռնո Քիշը և Վելմոշ Լազարը):

Ներկայում Հ–ում բնակվում է մոտ 15 հզ. հայ, սակայն հայկ. ծագումով հունգարների թիվը հասնում է 30 հզ–ի, մեծ մասը՝ Բուդապեշտում: Փոքրաթիվ հայկ. համայնքներ կան Դեբրեցեն, Շոպրոն, Սեկեշֆեհերվար ք–ներում: Վերջին տասնամյակներին Հ–ում հիմնադրվել են մշակութ. ընկ–ներ: Գործում է Սբ Գրիգոր հայկ. եկեղեցին: Հրատարակվում են *«Արմենիա»* (2003–ից, հայ. և հունգ.) հանդեսը, «Տրանսիլվանիայի հայ արմատների թերթը» (1997–ից, հունգ.):

ՀՈՒՆԳԱՐՆԵՐ (ինքնանվանումը՝ մաջարներ), ժողդ, Հունգարիայի հիմն. բնակչությունը: Ապրում են նաև Ռումինիայում, Սլովակիայում, ԱՄՆ–ում ևն: Ընդհ. թիվը՝ 14,7 մլն (2011): Լեզուն՝ հունգ.: Հավատացյալները հիմնականում կաթոլիկ են:

ՀՈՒՆԴ (Hund) Ֆրիդրիխ (1896–1986), գերմանացի ֆիզիկոս: *Մոլեկուլային օրբիտալների* մոդելը մշակողներից: Աշխ–ները վերաբերում են քվանտ. մեխանիկային, սպեկտրադիտմանը, մագնիսականությանը, քվանտ. քիմիային, ֆիզիկայի պատմությանը:

ՀՈՒՆԴ, ունդ (Achena), սերմնապտուղ, չոր, միասերմ, չբացվող պտուղ: Գոյանում է ստորին հարպտղային (պարակարպ) գինեցեղից, որը ձևավորված է ծաղկախողովակի հետ սերտաճած 2 պտղաթերթիկներով: Հ–երն ունեն տարբեր հավելուկներ (կեռեր, մազմզուկներ, փուփուլներ ևն), որոնք նպաստում են կենդանիների և քամու միջոցով տարածմանը: Հ. բնորոշ է աստղաձաղկազգիներին:

ՀՈՒՆՅԱԴԻ (Hunyadi) Յանոշ (մոտ 1407–1456), Հունգարիայի թագավորության ռեգենտ (գահապահ)՝ 1446–52–ին, զորավար: 1441–43–ին թագավորության իվ–ում հաջող արշավանքներ է կատարել օսմ. նվաճողների դեմ: 1456–ին Բելգրադի ճակատամարտում պարտության է մատնել թուրք. զորքերին:

ՀՈՒՆՆՈՒ, **սյաննու**, քոչվոր ժողդ, մ. թ. ա. 220–ից մինչև մ. թ. II դ. բնակվել են Կենտր. Ասիայում, Չինաստանից հս. տափաստաններում: Նրանց ներխուժումներից պաշտպանվելու համար կառուցել է Չինական մեծ պատը: Հ–ի մի մասը գաղթել է արմ., որտեղ բնիկների հետ ձուլումով, առաջացել են *հոները*:

ՀՈՒՆՈՆ, 1. հոմ. դից–յան գերագույն աստվածուհիներից, *Յուպիտերի* կինը, ամուսնության, մայրության, կանանց և պտղաբերության աստվածուհին: 2. (Աստղագիտ.) խոշորագույն *փոքր մոլորակներից* (N 3). հայտնաբերել է Կ. Հարդինգը (1765–1834, Գերմանիա): Չափերը՝ 290 x 245 *կմ*: Հ–ի հեռ–յունն Արեգակից չափվում է 1,99–3,55 ա. մ.:

ՀՈՒՆՎԱՐ [լատ.՝ Januarius, հոմ. Յանուս (Janus) աստծու անունից)], օրացուց. տարվա 1-ին ամիսը (31 օր):

ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ, **մեմուարներ** (ֆրանս.՝ memoires – հիշողություններ), վավերագր. գրկ–յան տեսակ, որևէ անձի՝ իր հիշողությունների հիման վրա շարադրած երկ՝ անցյալի այն դեպքերի, անձանց ու հանդիպումների մասին, որոնց հետ առնչություն է ունեցել հեղինակը: Տարբերում են Հ–յան ինքնակենսագրություն (Ս. Զորյան, «Մի կյանքի պատմություն») և ճանապարհորդ. նոթեր (Ս. Կապուտիկյան, «Քարավանները դեռ քայլում են») տեսակները:

ՀՈՒՇԱՐՁԱՆ, 1. ստեղծագործություն՝ երկրի ժողդ–ի մշակութ. ժառանգության մաս: Ըստ տիպաբան. առանձնահատկությունների՝ տարբերում են հնագիտ., պատմության, ճարտ–յան և մոնումենտալ արվ–ի հիմն. խմբերը: Հ–ներ են նաև գրչության նմուշները: 2. Մարդկանց հիշատակը և իրադարձությունները հավերժացնող արվ–ի ստեղծագործություն: Նախատիպերից են մեգալիթ. կառույցները և դամբարանադաշտերը, բուրգերը, հետագայում՝ նաև դամբարանները, տապանաքարերն ու մահարձանները: Հայաստանում Հ–ի նախատիպերը մենհիրներն են, վիշապները, ուրարտ. շրջանի կոթողները, խաչքարերը (X դ.) ևն:

«ՀՈՒՇԱՐՁԱՆ», պատմամշակութ. գիտ. տարեգիրք (1987–ից, Երևան, 1994–2004-ին ընդհատվել է): ՀՀ ՄՆ պատմամշակութ. ժառանգության ԳՀ կենտրոնի հրտ–յուն: Խմբ–ներ՝ Պարույր Մուրադյան, Հակոբ Սիմոնյան (2005–ից):

ՀՈՒՌՆ, **Հոռն** (Horn), Արվիդ Բեռնհարդ (1664–1742), շվեդ պետ. գործիչ: Գեն–լեյտ. (1704), կոմս (1706): 1709–19 և 1720–38-ին՝ թագավորության կանցլեր: Երկրորդ կանցլերության ժամանակ՝ երկրի փաստացի տիրակալը:

ՀՈՒՍ (Hus) Յան (1369/71–1415), չեխ ժողդ–ի Ազգ. հերոս, չեխ. Ռեֆորմացիայի գաղափարախոս: 1402–03 և 1409–10-ին՝ Պրահայի համալսարանի ռեկտոր: Հանդես է եկել գերմ. ճնշման և կաթոլիկ եկեղեցու դեմ՝ պահանջելով վերացնել թողության գրերի վաճառքը, անցում կատարել վաղ քրիստ. նորմերին ևն: Կաթոլիկ եկեղեցին դատապարտել է նրան, ողջակիզել Կոնստանցայում:

ՀՈՒՍԱԿ (Husák) Գուստավ (1913–1991), Չեխոսլովակիայի նախագահ՝ 1975–89-ին: 1971–87-ին՝ Չեխոսլովակիայի կոմկուսի ԿԿ գլխ. քարտուղար (1969–71-ին՝ 1-ին քարտուղար): 1990-ին հեռացվել է ԿԿ–ից:

ՀՈՒՍԱՅ, **Հուսեյ** (Houssay) Բեռնարդո Ալբերտո (1887–1971), արգենտինացի ֆիզիոլոգ: Բացահայտել է հիպոֆիզի հորմոնների դերն ածխաջր. փոխանա-

կության կարգավորման, մասնավորապես՝ շաքարային դիաբետի զարգացման ժամանակ: Նոբելյան մրց. (1947):

ՀՈՒՍԱՐՆԵՐ (հունգ., եզ. թիվ՝ huszar), թեթևազեն ***հեծելազորի*** տեսակ ռուս. և եվրոպ. բանակներում XVII–XX դդ–ում: Առաջացել է Հունգարիայում XV դ–ում: Ծանրազեն հեծելազոր Լեհաստանում՝ XVI–XVII դդ–ում:

ՀՈՒՍԵՒՆՈՎ Աբդուսալամ Աբդուլքերիմի (ծ. 1939), լեզգի փիլ.: ՌԳԱ ակադ. (2003, թղթ. անդամ՝ 1997–ից): 2006–15–ին՝ ՌԳԱ փիլ–յան ինստ–ի տնօրեն: Հեղինակ է «Բարոյականության ոսկե կանոնը» (1979), «Մեծն բարոյագետները» (1995), «Բացարձակի գաղափարը բարոյագիտության մեջ» (2004) և այլ աշխ–ների:

ՌԴ Պետ. մրց. (2003):

ՀՈՒՍԵՅՆ Սադամ Աբդ ալ Մաջիդատ Տիկրիտի (Saddam Hussein, 1937–2006), Իրաքի պետ., քաղ. և ռազմ. գործիչ, մարշալ (1979): 1979–2003–ին՝ Իրաքի նախագահ, 1979–91 և 1994–2003–ին, միաժամանակ՝ վարչապետ: 1968–ից՝ Բաաս (Արաբ. սոց. վերածննդի) կուս–յան առաջնորդներից, 1979–2003–ին՝ գլխ. քարտուղար: Պարտվել է իր սանձազերծած Իրաք–Իրանյան պատերազմում (1980–88): 1990–ի օգոստ–ին նվաճել է Քուվեյթը, որը հանգեցրել է լայնամասշտաբ ռազմ. գործողությունների և Իրաքի դեմ տնտ. պատժամիջոցների՝ պարտադրելով զորքերը հետ քաշել Քուվեյթից: Պաշտոնազրկվել է 2003–ին՝ կոալիցիոն զորքերի (ԱՄՆ–ի և Մեծ Բրիտանիայի գլխավորությամբ) Իրաք ներխուժման հետևանքով: 2006–ի դեկտ. 30–ին Իրաքի գերագույն դատարանի դատավճռով կախաղան է բարձրացվել՝ մարդկության դեմ կատարած հանցագործության մեղադրանքով:

ՀՈՒՍԵՅՆ ԻԲՆ ԱԼԻ (626–680), ***շիանիզմի*** երրորդ իմամը, խալիֆ Ալի իբն Աբա Թալիբի և ***Մուհամմեդ*** մարգարեի դուստր Ֆաթիմայի որդին: Սպանվել է օմայանների զորքերի հետ բախման ժամանակ: Շիաներն ամեն տարի ուխտագնացություն են կազմակերպում դեպի Հ. ի. Ա–ի մահվան վայր՝ Քարբելա (Իրաք): Նրա մահվան օրը համարվում է սգո (***շահսեյ–վահսեյ***) օր:

ՀՈՒՍԵՅՆ ԻԲՆ ԹԱԼԱԼ (Հուսեյն I, 1935–1999), Հորդանանի թագավոր՝ 1952–ից: Թալալ թագավորի որդին, Աբդալլա II թագավորի հայրը:

ՀՈՒՍԵՅՆ ՄԵՀԵՓԻ (Մեհեթ Ալի օղլի Հուսեյնով, 1909–1965), ադրբեջանցի գրող: Ադրբ. ԽՍՀ ժող. գրող (1964): Հեղինակ է պատմահեղ. թեմաներով պատմվածքների, վիպակների, «Ապշերոն» (1947), «Առավոտ» (մաս 1, 2, 1950, 1955, հայ.՝ 1960), «Սև ժայռեր» (1957), «Ստորերկրյա ջրերը հոսում են դեպի օվկիանոս» (հրտ.՝ 1966) վեպերի, նաև պիեսների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

ՀՈՒՍԵՅՆՅԱՆՆԵՐ, Թունիսի կառավարիչ բեյերի հարստություն՝ 1705–1957–ին: Հիմնադրել է Հուսեյն բեն Ալին (հուն. ծագմամբ թուրք սպա): Հ., 1705–1881–ին ճանաչելով Օսմ. կայսրության գերիշխանությունը, կառավարել են որպես անկախ տիրակալներ: Ֆրանս. հովանավորության շրջանում (1881–1956) Հ–ի իշխանությունը ձևական բնույթ է կրել: Թունիսի անկախության ձեռքբերումից (1956) հետո Հ–ի հարստությունը գահազրկվել է (1957–ի հուլիսի 25–ին), Թունիսը հռչակվել է հանրապետություն:

ՀՈՒՍԵՅՆՈՎ Չինգիզ Հասան օղլի (ծ. 1929), ադրբեջանցի գրող, գրականագետ: Գրում է նաև ռուս.: Բանասիր. գիտ. դ–ր (1979), պրոֆ. (1980, ՄՊՀ): Ադրբ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1989): «Անկյունային տուն» (1975) և այլ պատմվածքների ու վիպակների ժող–ներում, «Մուհամեդ, Մամեդ, Մամիշ» (1975), «Ընտանեկան գաղտնիքներ» (1986), «Igra ղեկավարություն» (1996) վեպերում արծարծել է արդի սոցիալ–բարոյական սուր խնդիրներ: Հեղինակ է նաև «Ֆաթալնի Ֆաթալի» (1983), «Չթողնել, որ ջուրը թափվի» (2003), «Անցյալն՝ ընդառաջ» (2009), «Ազատագրված ենթատեքստ» (2010) վեպերի, նաև էսսե–ների, հուշերի, գրականագիտ. աշխ–ների: 2014–ից՝ Իսրայելում:

ՀՈՒՍԵՌԼ (Husserl) Էդմունդ (1859–1938), գերմանացի իդեալիստ փիլ., ֆենոմենոլոգիայի հիմնադիրը: Ձգտել է փիլ–յունը դարձնել «խիստ գիտություն»՝ ֆենոմենոլոգ. մեթոդով («Տրամաբանական հետազոտություններ», 1900): Հ. ֆենոմենոլոգիան համարել է գիտ–յուն մաքուր գիտակցության (ինտենցիոնալ ակտերի) մասին: Հետագայում անդրադարձել է «կենսաշրջապատ» գաղափարին՝ որպես սոցիալ–մշակութ. նախափորձի՝ մերձենալով կյանքի փիլ–յանը:

ՀՈՒՍԵՓՅԱՆ (Հուսեփյան–Դորկին) Մարջրրի Մովսեսի (1922–2013), պատմաբան (ԱՄՆ): Եղել է Կոլումբիայի համալսարանի Բեռնարդ քոլեջի (Նյու Յորք) պաշտոնակից–դեկան: Աշխ–ները վերաբերում են Թուրքիայում Հայոց ցեղասպանությանն ու տեղահանությանը («Մոռացված ցեղասպանություն», 1966, «Խաղաղության առաջնահերթությունը», 1969, «Ինչ ցեղասպանություն, ինչ ողջակիզում: Լուրեր Թուրքիայից. 1916–23», 1984, «Զմյուռնիա 1922: Մի քաղաքի կործանումը», 1972, բոլորը՝ անգլ.):

ՀՈՒՄԻԿ Ա. ՊԱՐԹԵՎ, սուրբ Հուսիկ Ա. Պարթև (295–347), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 341–ից: ***Գրիգոր Ա. Լուսավորչի*** թոռը: Հաջորդել է հորը՝ ***Վրթանես Ա. Պարթևին***: 307–ին ամուսնացել է ***Տիրանի*** (338–ից՝ թագավոր) դստեր հետ: Կաթողիկոս է դարձել կնոջ մահից հետո: Գժտվել է թագավորի հետ և սպանվել Ծովփքի Բնաբեղ բերդում (ենթադրվում է, որ նա է դատապարտել Տիրանին՝ հեթանոսության հանդեպ հանդուրժողականություն ցուցաբերելու համար):

ՀՈՒՄԱՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ, ***Հուսյան պատերազմներ*** (1419–37), Յան Հուսի հետևորդների պայքարը կաթոլիկ եկեղեցու, ավատատիր. շահագործման և գերմ. բռնատիրության դեմ XV դ–ի 1–ին կեսին, որը վերածվել է համաժող. ընդվզման: Հ. շ. ունեցել է 2 հիմն. ուղղություն՝ թաբորականներ և չաշնիկներ: Ղեկ–ներ՝ Յան Ժիժկա, Յան Ժելիվսկի և Պրոկոպիոս Մեծ: 1420–31–ին ավատա–կաթոլիկ. ուժերը (Մարտին V Պապի և Սիգիզմունդ I–ի գլխավորությամբ) 5 անհաջող արշավանքներ են կազմակերպել Հուսյանների դեմ: 1433–ին չաշնիկները միացել են ռեակցիայի ուժերին և Լիպանի մոտ 1434–ին ջախջախել թաբորականներին: 1437–ին ընկել է թաբորականների վերջին ամրոցը՝ Սիոնը:

ՀՈՒՄՆԻ (Հումնուտդինով) Ֆաթիհ Հումնուտդինի (1908–1996), թաթար գրող: Հեղինակ է «Անցումի արահետ» (1959), «Երեսուն թվականը» (1963) վեպերի, թաթար. գյուղի մասին «Գիլմենիսան և իր հարևանները» (1971) և «Շուկայի մայդանը» (1977) վիպակների ու պատմվածքների, «Հանդիպումներ» (1979) պատմվածքների, «Մտնում եմ թավախիտ անտառը» (1985) հոդվածների ժող–ների, նաև պիեսների:

ՀՈՒՄՆԻԿ (Husnik) Յակուբ (1837–1916), չեխ գիտնական, պատճենաբազմացման լուսամեխ. եղանակի բնագավառի գյուտարար, գեղանկարիչ–դիմանկարիչ: Հայտնաբերել է ***լուսապատկությունը*** (1868):

ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍ I (Justinianus) Փլավիոս Պետրոս Սավվատիոս (482/483–565), Բյուզանդիայի կայսր՝ 527–ից: Նվաճել է Հս. Աֆրիկան, Սիցիլիան, Իտալիան, Իսպանիայի մի մասը: Համակարգել է հռոմ. իրավունքը (տես ***Հուստինիանոսի օրենագիրք*** և ***Կորպուս յուրիս ցիվիլիս***), կատարել է լայնածավալ շին. աշխ–ներ (Սբ Սոֆիայի տաճարը Կ. Պոլսում ևն):

ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍ II Ռինոտմետոս (669–711), Բյուզանդիայի կայսր՝ 685–95–ին և 705–ից՝ Հերակլիոսների հարստությունից: 689–ին արշավել է Հայաստան, Վրաստան և Աղվանք: 692–ին Ասորիքում պարտվել է արաբներին, կորցրել Հս. Աֆրիկան: 695–ին գահընկեց է արվել, սակայն 705–ին վերագրավել է գահը: 711–ին գահընկեց է արել զորավար Վարդանը և մահապատժի ենթարկել ընտանիքով:

ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍԻ ՕՐԵՆՍԳԻՐՔ, ***Կորպուս յուրիս ցիվիլիսի*** բաղկացուցիչ մասը: Ընդգրկում է 4652 հատված կայսեր. կարգադրություններից (կոնստիտուցիա)՝ մ. թ. II դ–ից մինչև Հուստինիանոս I–ի ժամանակաշրջանը: Նրա 12 գրքերը բովանդակում են եկեղեց. իրավունքի և պետ. ծառայողների պարտավորությունների (գիրք 1), մասնավոր իրավունքի (գիրք 2–8), քր. իրավունքի (գիրք 9), վարչ. և ֆին. իրավունքի (գիրք 10–12) բնագավառները:

ՀՈՒՍՏԻՆՈՍ II (Justinian, ծ. թ. անհտ–578), Բյուզանդիայի կայսր՝ 565–ից: Անհաջող փորձ է արել հարթելու երկաբնակների և միաբնակների հակամարտությունը: Նրա օրոք լանգոբարդները նվաճել են Իտալիայի զգալի մասը: 573–ին Մծբինի մոտ պարտություն է կրել պարսիկներից, կորցրել Դարա ամրոցը: 575–ին Մելիտենեում պարտության է մատնել պարսիկներին, մտել Հայաստան և Աղվանք:

ՀՈՒՎԵՐ (Hoover) Հերբերտ Կլարկ (1874–1964), ԱՄՆ–ի 31–րդ նախագահը՝ Հանրապետ. կուս–յունից: 1921–28–ին՝ առևտրի նախարար:

ՀՈՒՏԵՆ (Hutten) Ուլրիխ ֆոն (1488–1523), գերմանացի գրող, հումանիստ: Ասպետ. ապստամբության (1522–23) գաղ. առաջնորդը: Հեղինակ է Լուկիանոսի ոճով երգիծ. երկխոսությունների, «Տաղաչափության արվեստ» (1511) աշխ–յան, համահեղ.՝ «Սութ մարդկանց նամակները» պամֆլետի:

«ՀՈՒՐ», գր., գիտ. և հաս. ամսագիր (1971–76, Թեհրան՝ հայ. և պարսկ.): Խմբ.՝ Գագիկ Հովակիմյան:

ՀՈՒՐԱՆ (Panicula), կեղծ ծաղկաբույլ, որը բազմակի ճյուղավորվում է և ճյուղերի ծայրերին կրում է պարզ ծաղկաբույլեր՝ ողկույզներ (եղրևանի), հասկեր (հացահատիկ. բույսեր), զամբյուղներ (աստղածաղկազգիներ):

ՀՈՒՐԻՆԵՐ (արաբ.՝ հուր – սևաչյաներ), երևակայական օրիորդներ, որոնք, ըստ Ղուրանի, դրախտում զվարճացնում են արդարներին:

ՀՈՒՐՅԱՆ (Խաչատրյան) Թաթուլ Սամսոնի (1912–1942), բանաստեղծ: Հեղինակ է «Հասակ» (1934), «Աստղ» (1943), «Բանաստեղծություններ և պոեմներ» (1949), «Երկրի հետ» (1951), «Հուշարձան» (1970), «Լուսապսակ» (1982) և հայրենասիր. այլ երկերի ժող–ների: Զոհվել է ՀՄՊ–ում:

ՀՈՒՐՈՆ (Huron), լիճ ԱՄՆ–ում և Կանադայում՝ Մեծ լճերի կազմում: Մակերեսը՝ 59,6 հզ. *կմ*^{2}, խոր.՝ մինչև 208 *մ*: Սենտ Մերիս գետով կապվում է Վերին լճի, Մակինո նեղուցով՝ Միչիգան լճի հետ: Արտահոսում է Սենտ Քլեր գետը: Կա նավարկություն և ձկնորսություն: Նվինգստները՝ Սառնիա, Լիդլենդ (Կանադա), Ալպինա (ԱՄՆ):

ՀՈՒՐՈՆՆԵՐ (ինքնանվանումը՝ վենդատ), վիանդոտ, իրոկեզների խմբի հնդկացի ժողդ Հվ–արլ. Կանադայում (հիմնականում Քվեբեկ պրովինցիայի Լորետ ռեզերվացիայում՝ 2,8 հզ.) և ԱՄՆ–ում (Կանզաս, Օկլահոմա, Միչիգան նահանգ–ներ՝ 1,8 հզ.): Կանադայում խոսում են ֆրանս., ԱՄՆ–ում՝ անգլ.: Հավատացյալները հիմնականում կաթոլիկ են:

ՀՈՒՐՎԻՉ (Hurwicz) Լեոնիդ (1917–2008), հրեա տնտեսագետ: 1940–ից՝ ԱՄՆ–ում: Աշխ–ները վերաբերում են տնտ. անկայունության մոդելի, բաշխվող պաշարների օպտիմալության և տեղեկատվ. արդյունավետության, համակարգերի տեղեկատվ. ապակենտրոնացման, տնտ. մեխանիզմների նախագծման խնդիրներին: Նոբելյան մրց. (2007, Է. ***Մասկինի*** և Ռ. ***Մայերսոնի*** հետ):

ՀՈՒՐՎԻՑ (Hurwitz) Ադոլֆ (1859–1919), գերմանացի մաթեմատիկոս: Աշխ–ները վերաբերում են մաթ. վերլուծությանը, հանրահաշվին և թվերի տեսությանը: Լայն կիրառություն է ունեցել հանրահաշվ. հավասարումների արմատների իրական մասերի բացաս. լինելու Հ–ի հայտանիշը: Հայտնի են Հ–ի ձետա– ֆունկցիան, կայունության չափանիշները, Ռաուս–Հուրվիցի թեորեմը ևն:

ՀՈՒՐՈՒՆՑ (Ավանեսով) Լեոնիդ Կարախանի (1913–1982), գրող: Գրել է ռուս.: Հեղինակ է ժամանակակից կյանքը պատկերող «Աղմկում է Որոտանը» (1965) վեպի, «Կարապներ» (1962), «Հայրեր» (1970) վիպակների, նաև «Ես զինվորական փոստատար եմ» (1957), «Ծեր կաղնու հեքիաթները» (1980) պատմվածքների ու նովելների ժող–ների և այլ գործերի:

ՀՈՒՖԵՐՏ (Huppert) Հուգո (1902–1982), ավստրիացի բանաստեղծ, թարգմանիչ: Կատարելագործել է հրապարակախոս. քնարերգության ոճը («Հայրենիք», 1940, «Վրացական գավազան», 1954, ևն): Թարգմանել է Շ. Ռուսթավելու, Վ. Վ. Մայակովսկու, Ա. S. Տվարդովսկու գործերից:

ՀՈՒՖԵԼԱՆԴ (Hufeland) Քրիստոֆ Վիլհելմ (1762–1836), գերմանացի բժիշկ: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1833): Բեռլինում հիմնել է Պոլիկլինիկ. ինստ.: Հիմն. աշխ–ները՝ «Մարդկային կյանքը երկարացնելու արվեստը» (1797), «Գործնական բժշկության ձեռնարկ» (1839), թարգմանվել են բազմաթիվ լեզուներով:

ՀՕԿ, տես ***«Հայաստանի օգնության կոմիտե»***:

«ՀՕԿ», ազգ., գր–գեղ., մշակութ. ամսագիր (1833–35, Փարիզ): Հայաստանի օգնության արտ. կոմիտեների պաշտոն. հրտ–յուն:

Զ

Զ, հայ. այբուբենի 17-րդ տառը, անվանումը՝ ձա: Ունի ***գրչագիր***, ***երկաթագիր***, ***բոլորգիր***, ***շղագիր***, ***նոտրգիր*** տառատեսակները: Հայ-ի առաջնալեզվային լեզվատամնային պայթաշփական ձայնեղ բաղաձայն հնչյուն (հնչույթ) է: Թվային արժեքը՝ 80:

ԶԱԳԱԽՈՏ (Erysimum), **դեղնածաղիկ, աղվեսասուսեր**, կաղամբազգիների (խաչածաղկավորներ) ընտանիքի միամյա, երկամյա, բազմամյա խոտաբույսերի, հազվադեպ՝ կիսաթփերի ցեղ: Հայտնի է 100–125 տեսակ, ՀՀ-ում՝ 18–20 (մեծ մասամբ՝ բնաշխարհիկ): Մեծ մասը դեղաբույս է:

ԶԱԳԱՎԱՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ 1270, գումարվել է *Զագավանքում* (Կոտայք գվո-ի Զագ գ.)՝ աշխարհիկ և հոգևոր գործիչների մասնակցությամբ: Ընդունվել են կանոններ՝ ամուսնության, քին-ների և ժողդ-ի փոխադարձ պարտականությունների, վանականների մաքրակեցության, երեխաների կրոն. դաստիարակության և այլ հարցերի վերաբերյալ: Զ. ե. ժ-ի կանոնները չեն մտել *«Կանոնագիրք Հայոց»*-ի մեջ:

ԶԱԳԱՎԱՆՔ, Գետարգելի Սուրբ Նշան, ճարտ. համալիր, հոգևոր և մշակութ. կենտրոն ՀՀ Կոտայքի մարզի Առինջ գ-ից 2 *կմ* հվ-արլ.: Վանքի Սր Նշան եկեղեցին (VII դ.) փոքրաչափ խաչաձև, եռախորան գմբեթավոր կառույց էր (պահպանվել են պատերի ստորին շարքերը)՝ արմ. խաչաթևին հս-ից և հվ-ից կից մատուռներով (հավանաբար՝ XII–XIII դդ.): Սր Նշանից արլ. երբեմնի երկհարկանի եկեղեցին է (2-րդ հարկը չի պահպանվել):

ԶԱԳԱՐԱՄՆԿԵՐ, բազիդիավոր սնկերի ցեղ: Հայտնի է 20 տեսակ, ՀՀ-ում՝ 2՝ մոխրագույն և ձագարաձև (առավել տարածված տեսակը): Հանդիպում է ՀՀ հս-արլ. մարզերի անտառներում: Քիչ հայտնի ուտելի սունկ է:

ԶԱԳԵԶՈՐ, բերդ Սյունյաց նախնգ-ի Հաբանդ գվո-ում: Հիմնադրել է Սիսակյան նախարար. տոհմի նահապետներից Զագիկը: Զ. կոչվել է նաև այն ձորը, որտեղ հիմնվել է բերդը: Զ-ի ստույգ տեղը հայտնի չէ: Տեղադրվում է այժմյան Սյունիքի մարզի Վերիշեն գ-ի մոտակայքում:

ԶԱԽ ԷՍԷՌՆԵՐ [ռուս.՝ С(ЭС). Р(ЭР)], ձախ սոցիալիստ հեղ-ների կուս-յուն Ռուսաստանում. կազմավորվել է 1917-ի նոյեմբ-դեկտ-ին (ավելի վաղ՝ ***Էսէռների*** ձախ թևը): Առաջնորդներն էին Մ. Ա. Սպիրիդոնովան, Բ. Դ. Կամկովը, Մ. Ա. Նաթանսոնը: Հրատարակել են «Աշխատանքի դրոշ» թերթը: Մասնակցել են 1917-ի Հոկտ. հեղ-յանը, մտել (1917-ի նոյեմբ–1918-ի մարտ) Համառուսաստանյան ԿԳԿ-ի, ՌՀԿ-ի, Ժողկոմխորհի կազմի մեջ: 1918-ի սկզբից եղել են խորհրդ. իշխանության ագրար. քաղ-յան և ***Բրեստի հաշտության*** հակառակորդներ, 1919-ի հուլիսին փորձել են խափանել այն: 1922–23-ին կուս-յունը լուծարվել է, Բեռլինում գործել է արտ. պատվիրակությունը:

«ԶԱԽ ԸՆԴԴԻՄԱԴԻՏՅՈՒՆ», քաղ. հոսանքի անվանում ՌԿ(բ)Կ և ՀամԿ(բ)Կ գրկ-յան մեջ: 1920-ական թթ-ին միավորել է կուս-յան ղեկավարության քաղ-յան հակառակորդներին: Սկսել է կազմավորվել 1923-ին՝ Լ. Դ. Տրոցկու, Ե. Ա. Պրեոբրաժենսկու, Տ. Վ. Սապրոնովի, Գ. Լ. Պյատակովի և ուր. գլխավորությամբ: Հանդես է եկել կուս-յան «բյուրոկրատական վարչակարգի» քննադատությամբ, առաջնորդների (Ի. Վ. Ստալին, Գ. Ե. Զինովև, Լ. Բ. Կամենև և ուր.) «նեղ խմբակի» «ֆրակցիոն (խմբակցային) դիկտատուրայի» դեմ ևն: 1926-ին ձուլվել է Զինովևի և Կամենևի «Նոր ընդդիմության» հետ, այսպես կոչված՝ Միացյալ ձախ ընդդիմության (տրոցկիստ-զինովևական ընդդիմություն) մեջ:

«ԶԱԽ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐ», խմբավորում ՌԿ(բ)Կ-ում 1918-ին (Ն. Բուխարին, Կ. Ռադեկ, Գ. Պյատակով և ուր.): Ընդդիմացել են Վ. Ի. ***Լենինին*** և նրա կողմնակիցներին: Հանդես է եկել ընդդեմ Բրեստի հաշտության, ի պաշտպ-յուն՝ «հեղափոխական պատերազմի»:

ԶԱԽ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (Vänster Partiet, VP), կուս-յուն Շվեդիայում: Հիմնադրել են (1917) Շվեդիայի ս-դ. բանվ. կուս-յան ձախ թևի ներկայացուցիչները: 1921–67-ին կոչվել է Շվեդիայի կոմկուս, 1967–77-ին՝ Ձախ կուս-յուն-կոմունիստներ, 1990-ից՝ Զ. կ.: 1970-ական թթ-ի վերջերից արտացոլում է առավելապես ձախ մտավորականության հայացքները: Ներկայացված է Շվեդիայի և Եվրոպայի խորհրդարաններում:

ԶԱԽ ՁԵՌՔԻ ԿԱՆՈՆ (ֆիզ.), մագնիս. դաշտում հոսանքակիր հաղորդչի վրա ազդող մեխ. ուժի ուղղությունը որոշելու կանոն. եթե ձախ ձեռքի ափը տեղավորվի այնպես, որ պարզած մատները համընկնեն հոսանքի ուղղության հետ, իսկ մագնիս. դաշտի ուժագծերը մտնեն ափի մեջ, ապա բացված բթամատը ցույց կտա հաղորդչի վրա ազդող ուժի ուղղությունը:

ԶԱԽԷՍԷՌԱԿԱՆ ԽՈՌՎՈՒԹՅՈՒՆ 1918, տեղի է ունեցել հուլիսին, հիմնականում՝ Մոսկվայում: ***Ձախ էսէռների*** ղեկ-ները «ռուսական և համաշխարհային հեղափոխությունը» շարունակելու նպատակով փորձել են դրդել Գերմանիային տապալելու ***Բրեստի հաշտությունը*** (1918) ու վերսկսել ռազմ. գործողությունները Ռուսաստանի դեմ, և դրանով իսկ Գերմանիայի ու նրա դաշնակիցների զավթած տարածքներում նախաձեռնել ժող. ապստամբություն: Ճնշել են ***Լատիշական հրաձիգների*** 2 դիվիզիաները:

ԶԱԿԿՈՆԻ (Zacconi) Էրմետե (1857–1948), իտալացի դերասան: Հարել է նատուրալիզմին: Զգտել է կերպարներին տալ խոր մեկնաբանություն, ընդգծել հերոսների հոգեկան և ֆիզ. տառապանքները (Համլետ, Մակբեթ՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», «Մակբեթ», Նիկիտա՝ Լ. Ն. Տոլստոյի «Խավարի իշխանություն», ևն): 1908–11-ին Վահրամ ***Փափազյանը*** հանդես է եկել Զ-ի թատերախմբում:

ԶԱՄԲՈՒԿՆԵՐ, սաղմնակերպների կարգի ձկների ընտանիք: Երկ.՝ 30 *սմ*: Հայտնի է 4 տեսակ՝ Հս. կիսագնդի բարեխառն և բարձր լայնությունների քաղցրահամ ջրերում: Սպորտ. ձկնորսության և բազմացվող ձկներ են:

ԶԱՅՆ, 1. (ֆիզ.) գազերում, հեղուկներում և պինդ մարմիններում տարածվող և մարդու ու կենդանիների ականջներով ընկալվող ***առաձգական ալիքներ***: Մարդն ունակ է լսելու 16–2000 *Հց* հաճախությամբ Զ.: Տարբերում են ենթաձայն (հաճախությունը՝ $\upsilon < 16$ *Հց*), անդրաձայն ($\upsilon = 2000–10^9$ *Հց*) և վերձայն ($\upsilon > 10^9$ *Հց*): Հիմն. բնութագրերն են ***ձայնի արագությունը, ձայնի ճնշումը, ձայնի ինտենսիվությունը*** և ***ձայնի սպեկտրը***: 2. **Մարդու Զ.**, ձայն. ապարատի միջոցով արտաբերվող տարբեր բարձր-յան, ուժգնության ու տեմբրի հնչյունների համախումբ: 3. (Երաժշտ.) երաժշտության կառուցվածք. ամենափոքր տարրը, որն ունի որոշակի բարձրություն, ուժգնություն, տևողություն և տեմբր: Հոմոֆոնիկ երաժշտության մեջ հիմն. Զ-երից մեկը (հաճախ՝ վերևինը) առաջատարն է: Նվագախմբային կամ երգչախմբային ***պարտիտուրում*** առանձին գործիքի նվագամասը կամ ձայնախմբի երգամասը: Վոկալ-գործիք. երկի երգամասը: Հայ հոգևոր երաժշտության տեսության մեջ՝ ***ձայնեղանակ***: Զ. գործածվում է նաև ***«հնչյուն»*** հասկացության փոխարեն:

«ԶԱՅՆ», քաղ., հաս., տնտ. շաբաթաթերթ (1906–07, Թիֆլիս): Խմբ.՝ Տիգրան Իսահակյան:

«ԶԱՅՆ ՀԱՄՇԵՆԱԿԱՆ», պատմ., ազգագր., բանահյուս., գր. ամսաթերթ (2004-ից, Երևան): «Համշեն» հայրենակց-բա-

րեգործ. ՀԿ–ի հրտ–յուն: Հիմնադիր–խմբ.՝ Սերգեյ Վարդանյան:

«ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ», ազգ., գր., քաղ. շաբաթաթերթ (1891–1908, ԱՄՆ, 1908–11, Կ. Պոլիս, 1897–99–ին՝ «Տիգրիս»): Ամերիկայի հայ հրտչ. ընկ–յան, ապա՝ Հնչակյան կուսյան պաշտոնաթերթ: Խմբ–ներ՝ Հայկակ Էկինյան, Թովմաս Չարշաֆյան, Հովհաննես Հակոբյան, Սարգիս Մաղեմեզյան, Սուրեն Պարթևյան, Լևոն Լարենց և ուր.:

ՁԱՅՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ակուստիկա (հուն.՝ akustikos – լսողություն), ֆիզիկայի բաժին. ուսումնասիրում է ***առաձգական ալիքները*** նյութի մեջ՝ ամենացածր հաճախություններից մինչև ամենաբարձրը (10^{12}–10^{13} *Հց*): Ընդհ. և տես. Ձ. ուսումնասիրում է առաձգ. ալիքների ճառագայթման և տարբեր միջավայրերում տարածման, նաև միջավայրի հետ փոխազդեցության օրինաչափությունները: Ձ–յան բաժիններն են էլ., ճարտ., շին., մթն. երկրա–, հիդրո– Ձ–ները, ենթաձայնի ֆիզիկական և տեխնիկական, հոգեբ. և ֆիզիոլոգ. Ձ., երաժշտ. Ձ.:

1. **Ձ. երաժշտական**, ուսումնասիրում է երաժշտության օբյեկտիվ ֆիզ. օրինաչափությունները՝ պայմանավորված երաժշտության ընկալմամբ և կատարմամբ: 2. **Ձ. ճարտարապետական, շինությունների հնչականությունը**. ուսումնասիրում է ձայն. ալիքների տարածումը կառույցներում, դրանց անդրադարձումն ու մարումը, անդրադարձած ալիքների ազդեցությունը խոսքի և լսելիության վրա: Նպատակը թատեր., համերգ. և այլ դահլիճներում նախատեսված լսելիության ապահովումն է: 3. **Ձ. շինարարական**, ուսումնասիրում է շին. և ճարտ. հատակագծման միջոցներով շինությունների և բնակավայրերի ձայնամեկուսացման և աղմուկից շենքերի պաշտպ–յան հարցերը:

ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, 1. (տեխ.) որևէ կրիչի (սովորաբար՝ մագնիս. ժապավենի կամ օպտիկ. սկավառակի) վրա ձայն. տեղեկույթի գրանցումը՝ այդ տեղեկույթի պահպանման և հետագա վերարտադրման նպատակով: 2. Ձայնագրված ձայն. տեղեկույթ:

ՁԱՅՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ, ռեզոնանս, ձայնի հնչման ուժգնացումը. տեղի է ունենում հնչող մարմնի տատանումներն առավել մեծ ծավալ (կամ արձագանքող մակերես) ունեցող մարմնին հաղորդելու հետևանքով (օր.՝ լարի տատանումները հաղորդվում են երաժշտ. գործիքի հնչարկղին, որն ուժգնացնում և երանգավորում է հնչյունները):

ՁԱՅՆԱԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ, գիտ–յան և տեխնիկայի բաժին՝ պինդ մարմնի ձայնագիտ–յան, կիսահաղորդիչների ֆիզիկայի և ռադիոէլեկտրոնիկայի սահմանագծում. ուսումնասիրում է ***առաձգական ալիքների*** ուժեղացման և առաջացման հիմնախնդիրները՝ կիսահաղորդիչներում այդ ալիքների տարածման շարժընթացում, նաև ձայնագիտ. մեթոդներով ռադիոազդանշանների փոխակերպումն ու համապատասխան սարքերի ստեղծումը:

ՁԱՅՆԱԼԱՐԵՐ, որոշ երկկենցաղների և սողունների, կաթնասունների մեծամասնության ձայնառաջացմանը մասնակցող առաձգ. զույգ կապանները: Տեղակայված են կոկորդի կողմնային պատերի լորձաթաղանթի ծալքերի մեջ:

ՁԱՅՆԱՇԱՎԱԼ, **դիապազոն** (հուն.՝ dia pason chordon – բոլոր լարերի վրայով), ***երգչաձայնի***, երաժշտ. գործիքի, որևէ հնչյունաշարի, մեղեդու ևնի հնչյունածավալը: Որոշվում է ամենացածր և ամենաբարձր հնչյունների միջև ընկած ինտերվալով:

ՁԱՅՆԱՀԵՌԱՁԱՓ, ստորջրյա օբյեկտի հեռ–յան չափման հիդրոձայնագիտ. սարք: Գործողությունը հիմնվում է այն ժամանակահատվածի որոշման վրա, որը ծախսվում է Ձ–ի ենթաձայն. ազդանշանի՝ մինչև օբյեկտը եղած հեռ–յունն անցնելու և վերադառնալու համար:

ՁԱՅՆԱՄԵԿՈՒՍՈՒՄ, ձայնանթափանցիկությունը մեծացնող սարքավորումների համալիր, միջոցառումների համակարգեր՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու համար: Կիրառվում է շենքերում, ինքնաթիռներում, ավտոմեքենաներում և այլուր:

ՁԱՅՆԱՅԻՆ ԱԼԻՔՆԵՐ, առաձգ. միջավայրի նյութ. մասնիկների տատանող. շարժում, որը տարածվում է մեխ. ալիքների տեսքով և ընկալվում որպես ձայն:

ՁԱՅՆԱՅԻՆ ԱՂՄՈՒԿ, ֆիզ. բնույթի անկանոն ձայն. տատանումներ, որոնք բնութագրվում են ամպլիտուդի, հաճախության ևնի պատահական փոփոխություններով:

ՁԱՅՆԱՅԻՆ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՌԵԶՈՆԱՆՍ (ՁՄՄՌ), պինդ մարմնի միջուկ. սպինների համակարգի կողմից ձայն. ալիքների էներգիայի ռեզոնանս. կլանումը, որն առաջանում է առաձգական տատանումների քվանտի (ֆոնոն) էներգիայի և արտաքին մագնիս. կամ ներբյուրեղ. դաշտերում միջուկ. սպինների մակարդակների էներգիաների տարբերության հավասարության դեպքում: ՁՄՄՌ առաջինը 1952–ին տեսականորեն դիտարկել է Ս. Ա. Ալտշուլերը (ԽՍՀՄ), 1955–ին երևույթը հայտնաբերել են Ու. Պրոկտորը և Ու. Տանտիլան (ԱՄՆ):

ՁԱՅՆԱՅԻՆ ՊԱՐԱՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՌԵԶՈՆԱՆՍ (ՁՊՌ), ***պարամագնիսի*** էլեկտրոն. սպինների համակարգի՝ ձայն. ալիքների էներգիայի ռեզոնանս. կլանումը, որն առաջանում է առաձգ. տատանումների քվանտի (ֆոնոն) էներգիայի և պարամագնիս. իոնի մակարդակների էներգիաների տարբերության հավասարության դեպքում: ՁՊՌ 1952–ին կանխագուշակել է Ս. Ա. Ալտշուլերը (ԽՍՀՄ), 1969–ին դիտարկել են Է. Զեկորբանը, Ն. Շայրենը, Է. Թաքերը (ԱՄՆ): ՁՊՌ–ի հետազոտությունների արդյունքում ստեղծվել են անդրաձայն. ալիքների քվանտ. ուժեղարարներ և գեներատորներ:

ՁԱՅՆԱՅԻՆ ՍՊԵԿՏՐԱԴԻՈՒՄ, ձայն. ալիքների տարածման հարաչափերի (ձայնի մարման գործակից, արագություն ևն) հաճախական կախման փորձարար. հետազոտությունները՝ նյութում՝ նրա կառուցվածքի կամ հատկությունների որոշման նպատակով:

ՁԱՅՆԱՁԱՓՈՒԹՅՈՒՆ, կիբեռն. ***ձայնագիտության*** բաժին. ուսումնասիրում է իմպուլս. ձայնի աղբյուրի տեղը որոշելու եղանակները: Ձ–յան հիմքում ընկած է այսպես կոչված ժամանակների տարբերության մեթոդը: Վերջինը կախված չէ տեսանելիության պայմաններից, հնարավորություն է տալիս աշխատելու ցանկացած տեղանքում:

ՁԱՅՆԱՊՆԱԿ, արհեստ. նյութից պատրաստված սկավառակ (200—300 *մմ* տրամագծով), որի վրա պարուրաձև դրոշմված են ձայն. ակոսները: Ձայնագրությունը հնչում է, երբ ասեղը որոշակի արագությամբ սահում է ակոսի վրայով: Նախօրինակը պատրաստել է Թ. ***Էդիսոնը***, սակայն ձայնի մեխ. գրանցման և վերատպագրման առաջնությունը վերագրվում է Շ. Յ. Կրոյին (1842–1888): 1980–90–ական թթ–ին փոխարինվել է ձայնասկավառակով:

ՁԱՅՆԱՌՈՒԹՅՈՒՆ, դամ, հիմն. մեղեդուն ուղեկցող պահված ձայն, որը, առաջացնելով տարբական երկձայնություն, մեծացնում է հնչող մեղեդու արտահայտչ. ներգործությունը (տես «***Երգեհոնի կետ***»): Հայ պրոֆեսիոնալ մոնոդիկ երաժշտության մեջ հայտնի է դեռևս վաղ միջնադարից («ձայն առնել», «ձայն բռնել», «ձայնառ»): Կատարվել է առանց խոսքի, բաց բերանով կամ ռնգային, ժող. անսամբլ. նվագի դեպքում՝ երաժշտ. գործիքով (գործիքներով), մենանվագի դեպքում՝ առանձին լարով (լարերով), ևն:

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐ, խոսքի հնչյուններ՝ կազմված գլխավորապես ձայնից: Ձ–ի արտաբերման ժամանակ օդի հոսքը բերանի խոռոչում չի հանդիպում արգելքի: Հայ–ի ձայնավորներն են՝ ա, օ (ո), ու, ի, է (ե), ը:

ՁԱՅՆԱԼՐԿՈՒԹՅՈՒՆ, չթեքվող խոսքի մաս. արտահայտում է խոսողի զգայական, ոչ դատող. վերաբերմունքը: Տարբերում են բացականչ. (ա՜խ, ավա՜ղ, ջա՜ն, ուռա՜, վու՜յ ևն), կոչ. (ա՛, ա՛յ, տո՛, փի՛չտ ևն), նմանաձայն. (ծի՜վ…ծի՜վ, հաֆ–հաֆ, խրշշշ, ճր՜ռռ, բր՜զզ ևն) Ձ–ներ:

ՁԱՅՆԱՐՁԱԿ ՍԱՐՔ, ընդհ. պատյանում տեղակայված մի քանի միատիպ բարձրախոսներից կազմված ձայն. ճառագայթիչ: Նախատեսված է մեծ համերգասրահների, մարզասրահները ևն հնչյունավորելիս երաժշտության ու խոսքի հնչողությունն ուժեղացնելու համար:

ՁԱՅՆԵՂԱՆԱԿ, հայկ. մոնոդիայի տեսակ: Բնութագրվում է որոշակի կոմպոզիցիոն հատկանիշներով: Ձ–ների առկայությունը և նրանց ձևակերտ. նշանակությունը բնորոշ են հոգևոր, ժող. և գուսանաշուող. երգարվ–ին: Տես նաև ***Ութձայն***:

ՁԱՅՆԵՂՆԵՐ, բաղաձայն հնչյուններ՝ կազմված աղմուկից և ձայնից: Հայ–ի ձայնեղ բաղաձայններն են՝ բ, գ, դ, զ, ժ, ձ, ղ, ջ, վ: Տարբերվում են ***ձայնորդներից***:

ՁԱՅՆԻ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ, ***ձայնային ալիքի*** տարածման արագությունը, որը, կախված միջավայրից, տարբեր է. բնականոն պայմաններում Ձ. ա. օդում 330 *մ/վ* է, գազերում և գոլորշիներում՝ 150–1000 *մ/վ*, ջրում՝ 1500 *մ/վ*, հեղուկներում՝ 700–2500 *մ/վ*, պինդ մարմիններում՝ 2000–6000 *մ/վ*:

ՁԱՅՆԻ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ, ձայնի որակ: Որոշվում է մարդու լսողությամբ և պայմանավորված է ձայնի հաճախությամբ, հնչեղությամբ ու տեմբրով: Հաճախության աճին զուգընթաց՝ Ձ. բ. մեծանում է: Չափվում է *Հց*–երով:

ՁԱՅՆԻ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅՈՒՆ (ֆիզ.), ***ձայնային ալիքի*** տարածման ուղղությանն ուղղահայաց միավոր մակերեսով միավոր ժամանակում փոխանցվող միջին (ըստ ժամանակի) ալիք. էներգիան: Համեմատական է ***ձայնի ճնշման*** ամպլիտուդի քառակուսուն:

ՁԱՅՆԻ ԿԼԱՆՈՒՄ, որևէ միջավայրով անցնելիս ձայնի ալիքի էներգիայի՝ այլ տեսակի (օր.՝ ջերմայինի) էներգիայի

փոխակերպման հետևանքով ***ձայնի ինտենսիվության*** նվազումը:

ՁԱՅՆԻ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ (ֆիզ.), միավոր ժամանակում տվյալ մակերևույթով ***ձայնային ալիքով*** փոխանցվող էներգիան:

ՁԱՅՆԻ ՃՆՇՈՒՄ, լրացուցիչ ճնշում, որն առաջանում է ձայնի տարածման միջավայրում (***ձայնային դաշտերում***): Սովորաբար զգալիորեն փոքր է միջավայրի ճնշման համեմատությամբ:

ՁԱՅՆԻ ՍՊԵԿՏՐ, պարզ, ներդաշնակ ալիքների համախումբ, որն արտահայտում է ձայնի հաճախային (սպեկտր.) բաղադրությունը: Ստացվում է ***ձայնի վերլուծությամբ,*** պատկերվում կոորդինատ. հարթության վրա: Երաժշտ. ձայներն ունեն գծային, աղմուկները՝ հոծ սպեկտրներ:

ՁԱՅՆՕՊՏԻԿԱ, ***ձայնագիտության*** բաժին. ուսումնասիրում է պինդ և հեղուկ մարմիններում ***օպտիկական*** և ***ձայնային ալիքների*** փոխազդեցությունները:

ՁԱՆԱԲԱՁԱՐ (Ունդուր–Հեհեն, 1635–1723), մոնղոլ կրոն. և քաղ. գործիչ, ճարտ.: Մոնղ. բուդդայական եկեղեցու (ջեձունձամբա–խուտուխտա) առաջին ղեկ–ը, քանդ., գրող (տիբեթ. լեզվով): Որպես հոգևոր առաջնորդ՝նպաստել է Խալխա–ջունգուրյան պատերազմի դադարեցմանը և Հս. Մոնղոլիայի 3ին կայսրության կազմի մեջ մտնելուն (1691): Հիմնադրել է բուդդայական արվ–ի հս–մոնղ. դպրոցը: Հեղինակ է կրոնագիտ. ուսումնասիրությունների և այլ աշխ–ների:

ՁԱՎԱՏԻՆԻ (Zavattini) Չեզարե (1902–1989), իտալացի բանաստեղծ, սցենարիստ, կինոյի տեսաբան: Հեղինակ է վիպակների և պատմվածքների: Չ–ի սյուժեներով ու սցենարներով ստեղծվել են բազմաթիվ ֆիլմեր (ռեժ–ներ՝ Վ. դե Սիկա, Չ. դե Սանտիս և ուր.): Կինոյին վերաբերող գործերը դարձել են նեոռեալիզմի գեղագիտ. հիմքը: Խաղաղության միջազգ. մրց. (1955):

ՁԱՎԱՐ, հացահատիկ. մշակաբույսերի (ցորեն, գարի, հաճար) ամբողջ. կամ աղացված հատիկներից պատրաստված սննդամթերք, կիսապատրաստուկ: Հայաստանում Չ. պատրաստում են հիմնականում ցորենից և հաճարից, երբեմն՝նաև գարուց՝ սանդում ծեծելով հատիկների վրայի թեփը հանելու եղանակով: Ցորենի Չ–ի տեսակներն են՝հում Չ. (կորկոտ, աղացած հում Չ.), խաշած և աղացած Չ. (բլղուր): Չ. օգտագործում են ապուրներ, շիլա, պասուց տոլմա, հարիսա, աղանձ, հատիկ ևն պատրաստելու համար:

ՁԱՐԱՇՈՒՇԱՆ, շքանարգիզազգիների ընտանիքի սոխուկավոր բույսերի ցեղ: Հայտնի է մոտ 100 տեսակ՝ արևադարձ. և մերձարևադարձ. գոտիներում: Շատ տեսակներ գեղազարդիչ են:

ՁԱՐԽՈՏ, ***իգապտեր***, բազմոտիկազգիների ընտանիքի խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 200 տեսակ՝ Հս. կիսագնդի բարեխառն գոտու անտառներում և բարձրլեռն. արևադարձներում: Մի քանի տեսակներ գեղազարդիչ և ուտելի են:

ՁԳՈՂԱԿԱՆ ԱԼԻՔՆԵՐ (ֆիզ.), տարածության մեջ լույսի արագությամբ ազատ տարածվող փոփոխ. ձգող. դաշտ, որի գոյությունը բացահայտվում է մարմինների հարաբեր. արագացման ի հայտ գալով:

ՁԳՈՂԱԿԱՆ (ԳՐԱՎԻՏԱՑԻՈՆ) ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, **Չինսի անկայունություն**, ձգող. ուժերի (գրավիտացիոն խոտորումների) ազդեցությամբ նյութի արագության և խտության տարած. ֆլուկտուացիաների աճը ժամանակի ընթացքում:

ՁԳՈՂԱԿԱՆ ԴԱՇՏ, **գրավիտացիոն դաշտ**, զանգվածով օժտված որևէ ֆիզ. օբյեկտի ստեղծած ուժային դաշտ: Չ. դ–ի միջոցով իրականացվում է մարմինների ձգող. փոխազդեցությունը:

ՁԳՈՂԱԿԱՆ ՁԱՎԹՈՒՄ, ձգողության ռելյատիվիստ. տեսությունում ձգող. կենտրոնի կողմից անսահմանությունից եկող մասնիկների զավթում՝ գրավիտացիոն ձգողության հաշվին: Նյուտոնի ձգողականության տեսությունում 2 մարմինների խնդրում Չ. զ. անհնարին է. այդ տեսության համաձայն՝ անսահմանությունից եկող մասնիկը ձգող. կենտրոնի նկատմամբ շարժվում է պարաբոլով կամ հիպերբոլով և կրկին հեռանում դեպի անսահմանություն: Հարաբերականության ընդհ. տեսությունում անսահմանությունից եկող մասնիկի Չ. զ. հնարավոր է, եթե ձգող. կենտրոնը սև խոռոչ է:

ՁԳՈՂԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱ, մարմինների՝ ձգող. փոխազդեցությամբ պայմանավորված պոտենցիալ էներգիան:

ՁԳՈՂԱԿԱՆ ԿՈՆԱՊ (աստղագիտ.), գրավիտացիոն ուժերի ազդեցությամբ զանգվածեղ տիեզ. մարմինների աղետալիորեն արագ սեղմումը: Արեգակի զանգվածը 2–ից ավելի անգամ գերազանցող զանգվածով աստղերի էվոլյուցիան կարող է ավարտվել Չ. կ–ով՝ դրանցում միջուկ. վառելանյութի սպառումից հետո: Տես նաև ***Գերնոր աստղեր, Սև խոռոչներ***:

ՁԳՈՂԱԿԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ, համընդհ. (նյութի բոլոր տեսակներին հատուկ) փոխազդեցություն, տարր. մասնիկների հիմնարար փոխազդեցություններից ամենաթույլը: Ունի ձգող. բնույթ:

ՁԳՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՆ, **գրավիտացիոն հաստատուն** (նշանակվում է՝ G), համեմատականության գործակիցը Նյուտոնի ձգողության օրենքում (տես ***Տիեզերական ձգողության օրենք***), $G = (6{,}6742 \pm 0{,}0010) \cdot 10^{-11}$ Ն · $մ^2/կգ^2$:

ՁԳՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՌԱՎԻՂ, ձգողականության տեսությունում $r_{գր}$ շառավիղն այն գնդոլորտի, որի ներսում տեղակայված m զանգվածի ձգող. ուժն այդ գնդոլորտի վրա ձգտում է անսահմանության՝ $r_{գր} = 2\ mG/c^2$, որտեղ G–ն ձգողականության հաստատունն է, c–ն՝ լույսի արագությունը վակուումում: Սովոր. երկն. մարմինների Չ. շ. չափազանց փոքր է, օր.՝ Արեգակինը՝ $r_{գր} = 3$ *կմ*, Երկրինը՝ 0,9 *սմ*: Եթե մարմինը սեղմվի և դառնա Չ. շ–ից ավելի փոքր չափերի, ապա ոչ մի ճառագայթում կամ մասնիկ չի կարող հաղթահարել ձգող. դաշտը և $r_{գր}$ շառավղով գնդոլորտից դուրս գալ ու հասնել: Այդպիսի օբյեկտները կոչվում են սև խոռոչներ:

ՁԳՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, **գրավիտացիա**, նյութի հատկություն, որն արտահայտվում է մարմինների՝ ***ձգողական փոխազդեցություններով*** պայմանավորված փոխադարձ ձգողությամբ:

ՁԳՈՒՄ ԵՎ ՍԵՂՄՈՒՄ (նյութերի դիմադրություն), ձողի երկայն. ձևափոխման տեսակ. առաջանում է այնպիսի ուժերի ազդեցությամբ, որոնց համազորն ուղղահայաց է ձողի լայն. հատույթին և անցնում է ծանրության կենտրոնով: Կարող է առաջանալ ձողի ծայրերին կիրառված, նաև դրա ծավալով բաշխված ուժերով:

ՁԵԹԵՐ, **բուսական յուղեր**, ձիթատու բույսերի (արևածաղիկ, եգիպտացորեն, բամբակ, կանեփ, սոյա ևն) սերմերից ստացվող նյութեր, որոնց հիմն. բաղադրամասը բուս. ծագման ճարպերն են (մինչև 95–97 %): Պարունակում են նաև ազատ ճարպաթթուներ (1–2 %), ֆոսֆադիտներ (0,05–3 %), բուս. ստերիններ (0,3–1,5 %), վիտամիններ, դարաղանյութեր, ալկալոիդներ, եթերայուղեր ևն:

ՁԵՆ (ճապոն., < սանսկրիտ դհյանա – մեդիտացիա, կենտրոնացում, հայեցողություն), **չան** (չին.), ***բուդդայականության*** դպրոցներից: Սկզբնավորվել է Չինաստանում (V–VI դդ.), XII–XIII դդ–ում տարածվել Ճապոնիայում, որտեղ գոյատևում է մինչ օրս: Չ–ի հիմնադիրն է ճապոնացի միսիոներ Բոդհիդհարման (VI դ.): Չ–ին բնորոշ են քննադատ. վերաբերմունքը տեքստի՝ որպես ճշմարիտ իմացության փոխանցման միջոցի, ինչպես նաև տրամաբ–յան դիրքերից երկխոսությամբ (վեն–դա, մոնդո) կամ հարցադրմամբ (գուն–ան, կոան) անհիմաստության մասին մտորելու միջոցով «պայծառացման» (ու, սատորի) հնարավորության նկատմամբ հավատը, ինտուիտիվիզմի տարրերը: XX դ–ի կեսերից լայնորեն տարածվել է արմ. մտավորականության շրջաններում:

ՁԵՌԱԳԻՐ, 1. հնադարյան ոչ տպագիր գիրք, մատյան՝գրված մագաղաթի, թղթի ևնի վրա: Պահպանվել են շուրջ 35 հզ. հայ. Չ–եր, որոնք գրել և ընդօրինակել են V–XVIII դդ–ում, մեծ մասամբ՝ գրչության կենտրոններում, և պատմության ուսումնասիրման կարևոր աղբյուր են: Մեզ հասած հայ. ամենահին ամբողջ. Չ. VII դ–ի ***«Վահամոր Ավետարան»***–ն է, իսկ թվագրվածը՝ ***«Լազարյան Ավետարան»***–ը (887): 2. Գր–գիտ. աշխ–յան՝ձեռքով գրված կամ մեքենագրված ***բնագիրը***: Փխբ. իմաստով՝ գրողի, արվեստագետի ինքնատիպությունը, յուրահատկությունը: Տես նաև ***Գրչության արվեստ, Հնագրագիտություն, Հնագրություն, Ձեռագրագուցակ***:

ՁԵՌԱԳՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ **դատական**, քրեագիտ–յան բաժին. ուսումնասիրում է ձեռագրերն ու մշակում դրանց հետազոտման մեթոդները: Ձեռագրերի միջոցով հնարավոր է պարզել անձի տարիքը, սեռը, գրելու պահին նրա դիրքը (կանգնած, նստած ևն), վիճակը (հիվանդ, հարբած ևն):

ՁԵՌԱԳՐԱՏՈՒՆ, սրահ կամ սենյակ, որտեղ պահվում են հին և միջնադար. ձեռագիր մատյանները: Երբեմն Չ. լինում է ԳՀ հատուկ հիմնարկի գլխ. մասը, ինչպես օր.՝ Մոնղ–ում: Չ–երը եղել են նաև գրադարաններ, որտեղ XV–XVI դդ–ում պահվում էին նաև տպագիր գրքեր:

ՁԵՌԱԳՐԱՑՈՒՅՑ, **ցուցակ ձեռագրաց,** մոնղ–ներում, գրադարաններում, գիտաուս. հաստատություններում, վանքերում ու եկեղեցիներում պահվող, երբեմն նաև անհատներին պատկանող հնագույն ձեռագիր (գրչագիր) գրքերի մատենագիտ. ցանկ: Չ–ներում կամ սոսկ թվարկվում են ձեռագրերի վերնագրերը, կամ մանրամասն տեղեկություններ են տրվում նրանցից յուրաքանչյուրի հեղինակի, վերնագրի, բովանդակության, գրության ժամանակի, վայրի, ընդօրինակողի, ծաղկողի, հիշատակարանի, գրանյութի,

գրերի տեսակների, էջերի քանակի, վիճակի ննի մասին: Հայկ. Ձ-ներ կազմվել են V–VI դդ-ից: Առաջին լիակատար Ձ. կազմել է Դ. Շահնազարյանը («Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի Ս. Աթոռոյն Էջմիածնի», 1863): 1891-ից Վիեննայի Մխիթարյանների նախաձեռնությամբ և հայագետ բանասերների աջակցությամբ հրատարակվել են հայկ. ձեռագիր հավաքածուների բազմաթիվ Ձ-ներ. լույս են տեսել Վիեննայի կայսեր. մտնդ-ի (1891), Մյունխենի արքունի մտնդ-ի (1892), Թուրքիայի (1892), Վիեննայի Մխիթարյան մտնդ-ի (1895), Փարիզի Ազգ. գրադարանի (ֆրանս., 1908), Բրիտ. թանգարանի (անգլ., 1913), Բողլեյան գրադարանի (հայ., անգլ., 1918), Վենետիկի Մխիթարյան մտնդ-ի (հ. 1–3, 1914–66), Զմմառի վանքի (1964), Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի (հ. 1–10, 1966–90), Նոր Ջուղայի (1970), ՄՏԿԿ-ի (1984) և այլ վայրերի հայկ. ձեռագրերի Ձ-ները: 1960-ական թթ-ին Մտնդ-ում լույս է ընծայվել համառոտ Ձ. (հ. 1–3, 1965, 1970, 2007), 1984-ից հրատարակվում է Մտնդ-ում պահվող ձեռագրերի բազմահատոր մայր ցուցակ (ցայսօր՝ հ. Ա–Ը, 1984–2014):

ՁԵՌԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, Ձեռական աշխարի թագավորին Հայոց, հայ Արշակունի արքաներին Հռոմ. կայսրությունից և Պարթևական թագավորությունից տրված հող. տարածքներ: Առաջին Ձ. ի. «Ատրպատճաց գավառն» էր *Ատրպատականում* (Կապուտան լճի հս-արլ. մասում): Ձ. ի-ներ էին Մեծ Հայքին սահմանակից Փոքր Հայքը և Գիմաթենե գվռ-ը, Ամասիան, Կոմմանե, Ձալիքոսը և Ձելան: Հայ Արշակունիների անկումից (428) հետո հռոմ. Ձ. ի-ներն անցել են Բյուզանդիային:

ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, Կարգ ձեռնադրության, Կարգ քահանայության, ՀԱԵ 7 *խորհուրդներից*: Ձ. Ավետարանը քարոզելու և խորհուրդները կատարելու պատրաստվածություն ստացած անձանց՝ այդ պաշտոնին նվիրվելու խորհուրդն է: Կատարում է եպս-ը, նվիրագործվում՝ *օծումով*: Նշանակում է ձեռքը դնել կրոն. աստիճան, կարգ կամ իշխանություն ստացողի գլխին: Ձ. սերնդեսերունդ փոխանցում է աստված. շնորհները:

ՁԵՌՆԱԹԱԹ, ցամաք. ողնաշարավորների առաջային վերջույթի, մարդու՝ *ձեռքի* բաժին: Կազմված է դաստակից (8 ոսկր), նախադաստակից (5 ոսկր) և շարժուն 5 մատներից՝ 3-ական մատոսկրերով (ֆալանգներ)՝ բացի 1-ին մատից (2 մատոսկր): Մարդու Ձ. ունակ է կատարելու բարդ շարժումներ:

ՁԵՌՆԱԹԵՎԱՎՈՐՆԵՐ, կաթնասունների կարգ: Առջևի վերջույթները կերպափոխվել են թևերի, կարող են թռչել: Հայտնի են 2 ենթակարգ [թռչող շուն (աղվես) և չղջիկներ], 950 տեսակ, մեծ մասը՝ արևադարձներում և մերձարևադարձներում: Ակտիվ են մթնշաղին և գիշերը:

ՁԵՌՆԱԹԻ, թևճակ, փայտից կամ արհեստ. նյութից պատրաստված ձվաձև, ցանցապատ մարզագույք՝ թենիս կամ բադմինթոն խաղալիս գնդակին կամ փետրագնդակին հարվածելու համար:

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ, ձեռնարկատիրական գործունեություն, ինքնուրույն գործունեություն՝ գույքի օգտագործումից, ապրանքների վաճառքից, աշխ-ների կատարումից, ծառայությունների մատուցումից կանոնավոր շահույթ ստանալու նպատակով:

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ, հաս. արտադր-յան համակարգի սկզբն. օղակ: Համակցում է նյութ., գիտատեխ., աշխ. և մտավոր պահանջները՝ պահանջվող ծավալի, անվանացանկի և որակի արտադրանք թողարկելու կամ ծառայություններ մատուցելու, շուկայի պահանջը բավարարելու, շահույթ ստանալու և այն առլգն-ի հասցնելու համար: Կազմակերպման տեսակներն են՝ անհատական, տնտ. ընկերակցություն, արտադր. կոոպերատիվներ, սպառող. կոոպերատիվ, գյուղաց. կոլեկտիվ տնտ-յուն, ԲՀ-ներ, ՍՊՀ-ներ, համատեղ, դուստր, վարձակալ. Ձ-ներ, կարտել, սինդիկատ, տրեստ, կոնցեռն, ասոցիացիա, կոնսորցիում, հոլդինգ ևն:

ՁԵՌՆՈՍՏԱՆԻ, այե-այե, կիսակապիկների ենթակարգի կաթնասուն կենդանի, համանուն ընտանիքի միակ տեսակը: Մարմնի երկ.՝ մոտ 40, պոչինը՝ մոտ 60 *սմ*: Ապրում է Մադագասկարի հս-արլ-ում: Անհետացման եզրին է. գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՁԵՌՔ, մարդու վերին 2 վերջույթներից յուրաքանչյուրը՝ ուսահոդից մինչև *մատնեդի* ծայրը, ինչպես նաև դաստակից մինչև մատների ծայրը՝ *ձեռնաթաթը*:

ՁԵՌՔԲԵՐՈՎԻ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽԱՏԱՆԻՔ [ՁԻԱՀ, Acquired Immunity Deficit Syndrome (AIDS)], ախտաբան. վիճակ: ՄԻԱՎ վարակի վերջն. փուլն է: Բնորոշվում է իմուն. համակարգի գործունեության խաթարմամբ, որի հետևանքով օրգանիզմն անպաշտպան է դառնում տարբեր հիվանդությունների նկատմամբ:

ՁԵՌՔԻ ԳՆԴԱԿ, հանդբոլ (< անգլ. handboll, hand – ձեռք և boll – գնդակ), թիմ. մարզախաղ. ձեռքով գնդակի նետում թիմակիցներին՝ հակառակորդի դարպասը (դրա առջևի 6-*մ*-անոց գոտուց) խոցելու նպատակով: Խաղում են 7-ական մարզիկներով, որոնցից մեկը դարպասապահ է:

ՁԵՎ ԵՎ ՄԱՏԵՐԻԱ, *Արիստոտելի* փիլ-յան կատեգորիաներ, որոնք ընդունել է *թոմիզմը*. բնորոշում են կամայական հոսուն, փոփոխական կեցություն: Ձևը (էյդոս, «մորֆե») իրի յուրահատուկ սկզբունք է, նրա էությունը, նպատակը և շարժիչ ուժը, որը գործուն է դարձնում նախամատերիան՝ որպես կեցության պարզ հնարավորություն, փոփոխությունների անձև և անորոշ սուբստրատ (տես *Ակտ և ներունակություն*): «Ձ.» և «Մ.» հասկացությունները հարաբերակից են միմյանց. արդեն ձևավորվածը կարող է հանդես գալ որպես մատերիայի ավելի բարձր մակարդակ՝ ձևի նկատմամբ («ձևերի ձև»՝ խելք-նուս, թոմիզմում՝ Աստված):

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, մորֆոլոգիա (< հուն. morphe – ձև և *...լոգիա*) (կենսբ.), գիտ-յուն օրգանիզմների ձևի և կառուցվածքի մասին: Տարբերում են մարդու և կենդանիների Ձ., որին վերաբերում են անատոմիան, սաղմնաբանությունը, հյուսվածքաբանությունն ու բջջաբանությունը, և բույսերի Ձ., որն ուսումնասիրում է բույսերի կառուցվածքն ու ձևագոյացումը՝ անհատ. (օնտոգենեզ) և էվոլյուցիոն-պատմ. (ֆիլոգենեզ) զարգացման ընթացքում: Մարդու Ձ. մարդաբանության բաժին է. ուսումնասիրում է մարդու օրգանիզմի փոփոխությունը և նրա առանձին մասերի օրինաչափությունները (տարիք., սեռ., էթնո-տարածք., կազմվածք., մասնագիտ. ևն): Մարդու Ձ-յան տվյալներն օգտագործվում են մարդաբան. չափորոշման և էրգոնոմիկայի մեջ:

ՁԵՎԱԽԱԽՏՈՒՄ, դեֆորմացիա, 1. (ֆիզ.) արտաքին պայմանների ազդեցությամբ մարմնի չափերի և ձևի փոփոխությունը (առանց զանգվածի փոփոխության): Ձ-ման պարզագույն տեսակներն են ձգումը, սեղմումը, սահքը, ոլորումը, ծռումը: Պինդ մարմինների Ձ-ներն ու լարումներն ուսումնասիրում են առաձգականության և պլաստիկության տեսություններում: **Գծային Ձ.**, արտաքին կիրառված ուժի ազդեցությամբ երկ-յան հարաբեր. փոփոխությունը: 2. **Հասարակական Ձ.**, որևէ երևույթի ձևի փոփոխություն, էության խեղաթյուրում (օր.՝ սոցիալ. կառուցվածքի Ձ.):

ՁԵՎԱՆՄՈՒՇ, շաբլոն (գերմ.՝ Schablone – նմուշ, մոդել), 1. (ճարտ. և շին.) բնական մեծությամբ տրված դետալի գծագիր: 2. Պատրաստի շինվածքի ձևերը ստուգելու հարմարանք, գործիք:

«ՁԵՎԱՊԱՇՏԱԿԱՆ ՄԵԹՈԴ» գրականագիտության մեջ, գեղ. ձևն ընդունում է որպես գրկ-յան առանձնահատկությունը որոշող, ինքնազարգացման ունակ գր. կատեգորիա (տես *Բովանդակություն և ձև*): Կազմավորվել է գերմ. արվեստագիտ-յան մեջ XIX–XX դդ-ի սահմանագծին (Գ. Վյոլֆլին, Օ. Վալցել, Վ. Դիբելիուս, Լ. Շպիտցեր): 1930–50-ական թթ-ին զարգացրել են շվեյցար. «մեկնության դպրոցը» (Է. Շտայներ, Վ. Կայզեր) և ամերիկ. «նոր քննադատությունը»: 1960-ական թթ-ին ձևավորվել է նոր ճյուղ՝ կառուցվածք. գրականագիտ-յունը:

ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՐՎԵՍՏ, հարդարման արվեստ, *դեկորատիվ արվեստի* ոլորտ, փողոցների, հրապարակների, արտադր. տեղամասերի, նաև ցուցափեղկերի, ժող. տոնահանդեսների, շքերթների ևն տոն. (այսինքն՝ ժամանակավոր) ձևավորումը: Միջնադարում ձևավորվել են եկեղեց. և աշխարհիկ կառույցները: XIX դ-ի վերջ-XX դ-ի սկզբին օգտագործել են ազգ., նաև եվրոպ. արդի ձևավորման միջոցները, 1960-ական թթ-ից՝ հաս. շենքերի, ռեստորանների ննի ներքին ու արտաքին ձևավորման առաջավոր սկզբունքներ:

ՁԵՎԱՅՆՈՂՆԵՐ, բզեզների ընտանիք: Երկ.՝ 1,5–5 *մմ*: Հայտնի է մոտ 300 տեսակ: Անհանգստացած Ձ. թալկանում են, սատկած ձևանում: Որոշ տեսակներ վնասում են սննդ. պաշարները, մորթին, հաճախ հանդիպում են տներում և պահեստներում (օր.՝ գող ձևացողը, ևն):

ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, 1. (մաթ.) մի մաթ. օբյեկտի (երկրչփ. պատկեր, հանրահաշվ. ֆունկցիա ևն) փոխարինումը որոշակի կանոններով այդ օբյեկտից (համասրհնակ) ստացվող օբյեկտով: **Նույնական Ձ.**, մի արտահայտության փոխարինումը նույնականորեն դրան հավասար, բայց ձևով տարբեր մեկ այլ արտահայտությամբ, օր.՝ փակագծերի բացումը, բազմապատկիչների վերածումը ևն: Տես նաև *Գծային ձևափոխություն*: 2. Արմատական փոփոխություն և ինչ-որ բանի մեջ նման փոխություններ մտցնելու շարժընթաց:

ՁԵՐԵՆ, սնամեջ եղջերավորների ընտանիքի երկսմբակավոր կենդանի: Երկ.՝ մինչև

1,5 *մ*, արուների եղջյուրների երկ.՝ մինչև 28 *սմ*: Ապրել է Ասիայում (Մոնղոլիա, Չինաստան), մինչև 1950-ական թթ-ի վերջը՝ Արլ. Անդրբայկալում (այլևս չի հանդիպում): Պահպանվել է առավելապես ազգ. պարկերում և արգելոցներում:

ՁԵՐԺԻՆՍԿԻ Իվան Իվանովիչ (1909–1978), ռուս կոմպոզիտոր: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1957), ժող. արտիստ (1977): Հեղինակ է 10 օպերայի («Խաղաղ Դոն», 1935, 2-րդ մասը՝ «Գրիգորի Մելեխով», «Հերկած խոպան», 1937, «Մոսկվայից հեռու», 1954, ևն), ռոմանսների շարքերի («Հյուսիսային երգեր», 1934, «Նոր գյուղ», 1948, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1950, ևն), պոեմների, նաև սիմֆ. երկերի, գործիք. պիեսների, կինոյի և թատրոնի երաժշտության:

ՁԵՐԺԻՆՍԿԻ Ֆելիքս Էդմունդովիչ (1877–1926), խորհրդ. հեղ. և պետ. գործիչ (ծագումով՝ լեհ): Մասնակցել է 1905–07-ի հեղ-յանը (Վարշավա): 1917-ի դեկտ-ից (ընդմիջումով)՝ Համառուսաստ. արտակարգ հանձնաժողովի (ՎՀԿ) նախագահ և ՌԽՖՍՀ ՆԳ ժողկոմ (1919–23), 1921-ից, միաժամանակ՝ հաղորդակցության ճանապարհների ժողկոմ, 1921–23-ին՝ Համառուսաստ. ԿԳԿ-ի երեխաների հանձնաժողովի նախագահ: 1924-ից՝ ԽՍՀՄ ԺՏԲԽ նախագահ, ՌԿ(բ)Կ և ՀամԿ(բ)Կ ԿԿ-ների Քաղբյուրոյի անդամ:

ՁԵՖԻՐԵԼԼԻ (Zeffirelli) Ֆրանկո (Ջանֆրանկո Կորսի, Corsi, ծ. 1923), իտալացի ռեժ.: Նկարահանել է «Ռոմեո և Ջուլիետ» (1968), «Հիսուս Նազովրեցի» (1977), «Ձեյն Էյր» (1996), «Եղբայրներ» (2005) և այլ կինոնկարներ, ֆիլմ-օպերաներ՝ Ջ. Վերդիի «Տրավիատտա» (1982), «Օթելլո» (1986), որոնց բնորոշ են նրբաճաշակ կոմպոզիցիան, գուն. լուծումները, ժամանակի կոլորիտի ճշգրիտ վերարտադրումը, զգեստների և զարդերի ճոխությունը:

ՁԻԱԲՈՒԹՅՈՒՆ, զբաղվում է *ձիերի* բուծմամբ և օգտագործմամբ: Ծագել է Ասիայի և Եվրոպայի երկրներում, զարգացած է եղել նաև Հին Հայաստանում: Հիմն. ուղղություններն են՝ տոհմ., սպորտ., հազվադեպ՝ մսակաթնային: Հաշվվում է ձիերի 200–300 ցեղ: Ձիերն օգտագործվում են նաև զբոսաշրջության մեջ, շքերթ. միջոցառումներում, անասնաբուժ. պատրաստուկներ ստանալու և այլ նպատակներով: 2. Մասնավոր զոոտեխնիկայի բաժին, որի հիմքը հիպպոլոգիան է:

ՁԻԱԳՆԴԱԿ, **պոլո** (անգլ.՝ polo), թիմ. մարզախաղ. ձիեր հեծած 2 թիմերից յուրաքանչյուրը ձգտում է մականների հարվածներով փայտե գնդակն անցկացնել հակառակորդի դարպասով: Դաշտի չափերը՝ 274 x 182 *մ*, գնդակի տրամագիծը՝ 8 *սմ*, զանգվածը՝ 120–135 *գ*: Օլիմպ. խաղերի ծրագրում էր 1900, 1908, 1920, 1924, 1936-ին:

ՁԻԱԹՌՉՆԱԿՆԵՐ (Motacillidae), ճնճղուկանմանների կարգի խաղտտնիկների ընտանիքի թռչունների ցեղ: Երկ.՝ 14–18 *սմ*: Հայտնի է 35 տեսակ՝ Արկտիկայից մինչև Ենթարկտիկայի սահմանները, Եվրասիայում՝ 3: ՀՀ-ում հանդիպում են սպիտակ, դաշտ., անտառ., մարզագետն., կարմրախածի և լեռն. Ձ.:

ՁԻԱԿԱՄԿ (Aesculus), ձիակասկազգինեբի ընտանիքի ծառերի ցեղ: Հայտնի է 15 (այլ տվյալներով՝ 25) տեսակ, ՀՀ-ում մշակության մեջ՝ 1՝ սովորականը. աճում է խոնավ և զով շրջաններում (Սևանի ավազան, հս-անտառ. գոտի, Շիրակի հարթավայր): Դեղազարդիչ է և դեղաբույս:

ՁԻԱՁԵՏ (Equiset), ձիաձետազգիների ընտանիքի սպորակիր խոտաբույսերի ցեղ: Տերևները մանր են, թեփուկանման, լուսասնթեզի ֆունկցիան կատարում են ցողունները և ճյուղիկները: Բազմանում են հիմնականում կոճղարմատներով, նաև սպորներով: Հայտնի է մոտ 30 տեսակ՝ տարածված ամբողջ երկրագնդում (բացի Ավստրալիայից)՝ ջրամբարներում, անտառներում, մարգագետիններում, դաշտերում: Որոշ տեսակներ արոտավայրային բույսեր են. դաշտ. Ձ. վտանգավոր մոլախոտ է: Հայտնի է 30–32 տեսակ, ՀՀ-ում՝ 6՝ ընկղմված, ձմեռող, ճյուղավորված, դաշտ. են՝ տարածված գրեթե բոլոր մարզերում: Դաշտ. Ձ. դեղաբույս է: Որոշ տեսակներ թունավոր են կենդանիների համար:

ՁԻԱՄՊՈՐՏ, հեծելային սպորտ, նժույգավարություն, հնագույն մարզաձև: Հիմն. տեսակներն են՝ մարզարանային (մանեժային) ձիավարությունը, արգելքների հաղթահարումը (կոնկուր), եռամարտը, արգելքներով ձիարշավները, սթիփլ-չեյզը, կրոսները, ձիավազքը, ձիադահուկ. մրցումները, ձիասպորտ. խաղերը: Ձիարշավի մրցումները մ. թ. ա. 648-ից սկսած ընդգրկվել են հին-հուն. օլիմպ. խաղերի ծրագրի մեջ:

Հայաստանում ձիարշավները, ձիախաղերը, ասպարախաղը, մականախաղը, կառարշավները հայտնի էին դեռևս հեթանոս. ժամանակներից: Ձիավարության մրցումներ են կազմակերպվել նաև հայկ. հարսանիքների, հաղթանակի տոների, ձեռնադրման, օծման արարողությունների ժամանակ: Նոր ժամանակներում ձիարշավի առաջին մրցումները Հայաստանում կազմակերպվել են 1920–30-ական թթ-ին: 1949-ին կառուցվել է Երևանի ձիարշավարանը: Օլիմպ. խաղերում Ձ. ընդգրկվել է 1900-ին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններն անցկացվում են 1953-ից: Ձ-ի միջազգ. ֆեդերացիայում (FEI, հիմն.՝ 1921) ընդգրկված է 132 երկիր (2015), այդ թվում՝ Հայաստանը (1992):

ՁԻԱՍՏԱՅՆԵՐ, **ձիաբոռեր**, թաղանթաթևավորների կարգի խայթող միջատների ցեղ: Հայտնի տեսակներից է Nespinae ենթաընտանիքի արլ. Ձ., որը լայնորեն տարածված է նաև ՀՀ-ում:

ՁԻԱՍՏԿ (Hyppeastrum), շքանարգիզազգիների ընտանիքի սոխուկավոր խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 75 տեսակ՝ Ամերիկայի արևադարձներում և մերձարևադարձներում: Որոշ տեսակներ աճեցնում են սենյակներում, ջերմոցներում:

ՁԻԱՎՈՐՆԵՐ, **հեծելվորք, ասպետք**, մանր ու միջին ազնվականների դաս Կիլիկիայի հայկ. պետությունում: Համապատասխանել են Արշակունյաց և Բագրատունյաց Հայաստանի *ազատներին*: Թագավորից և խոշոր ավատատերերից ստանալով կալվածքներ ու ռոճիկ (հոոգ)՝ կատարել են զինվ. ծառայություն՝ գերազանցապես հեծելազորային, վարել գործակալ. փոքր պաշտոններ: Կրել են կապույտ համազգեստ՝ ոսկեգույն խաչի և հայկ. այրուձիու նշաններով:

ՁԻԱՐԾԱՎ, հեծկան ցեղական ձիերի քառատրոփով փորձարկում՝ նրանց աշխատունակությունը (արագավազություն, դիմացկունություն, ցատկունություն) որոշելու և զարգացնելու համար: *Ձիասպորտի* մարզաձևերից է: Առաջացել է XVII դ-ում Անգլիայում: Տեսակներն են հարթ (հարթ տեղանքում), արգելքներով, կտրտված տեղանքում, խոչընդոտներով (սթիփլ-չեյզ) Ձ-ները:

ՁԻԱՐՇԱՎԱՐԱՆ, **հիպոդրոմ** (հուն.՝ hippodromos, < hippos – ձի և dromos – վազք, վազքի վայր), վարգաձիերի, արշավաձիերի և ծանրաքարշ ձիերի փորձարկման ու *ձիասպորտի* մրցումների վայր, այդ փորձարկումներն ու մրցումները կազմակերպող հաստատություն: Ձ-ում կառուցված են շրջանաձև վարգուղիներ, վազքուղիներ, որոնց ներսում կան ձիասպորտի տարբեր մրցումների հրապարակներ և խոչընդոտներով վազքուղիներ՝ սթիփլ-չեյզի համար, հանդիսատեսի տրիբունաներ և մրցավարի աշտարակ: Ձ-ին կից գործում են օժանդակ և տնտ. կառույցներ (ձիանոց, պայտարան, ձիաբուծարան, կարանտին. մասնաշենք ևն):

ՁԻԱՒԻԺ, հզորության արտահամակարգ. հնացած միավոր: Ներմուծվել է XVIII դ-ում և կիրառվում է տեխնիկայի որոշ բնագավառներում (ավտոմոբիլաշինություն, տրակտորաշինություն): Նշանակվում է՝ *ձ. ու.*, 1 *ձ. ու.* = 75 *կգ մ/վ* = 0,736 *կՎտ*:

ՁԻԳԱՆ Եֆիմ Լվովիչ (1898–1981), կինոռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1969): Նկարահանել է «Մենք Կրոնշտադից ենք» (1937), «Նախերգանք», «Ջամբուլ» (1956), «Երկաթե հեղեղ» (1967) և այլ ֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941):

ՁԻԵՐ (Equus), ձիազգիների ընտանիքի միասմբակավոր կենդանիների սեռ: Սարմնի երկ.՝ մինչև 2,8, մնդավի բարձր.՝ մինչև 1,6 *մ*: Վայրի տեսակները հանդիպել են Ասիայի և Աֆրիկայի տափաստան., կիսաանապատ. և անապատ. շրջաններում (Եվրոպայում բնաջնջվել են): Ընդգրկում է 3 ենթաընտանիք, մոտ 20 սեռ: 8 տեսակները խմբավորված են 4 ենթասեռի մեջ՝ իսկական Ձ., էշեր, կուլաններ (կիսաէշեր) և վագերաձիեր: Տես նաև *Ձիաբուծություն*:

ՁԻԹԱՏՈՒ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐ, բույսերի խումբ: Մշակում են ձեթ ստանալու համար: Պատկանում են տարբեր բուսար. ընտանիքների՝ աստղածաղկազգիներ (արևածաղիկ, գաթի ծաղիկ), բակլազգիներ (գետնանուշ, սոյա), խուլեղինջազգիներ (պերիլլա, դաշխակտավատ), խաչածաղկավորներ (սորուկ, մանանեխ, հլածուկ ևն), ձիթենազգիներ (ձիթենի), կտավատազգիներ (կտավատ), իշակաթնուկազգիներ (տզկանեփ), քնջութազգիներ (քնջութ):

ՁԻԹԵՆԱԶԳԻՆԵՐ (Oleaceae), ձիթենազգիների ընտանիքի մշտադալար ծառերի և թփերի ցեղ: Յուղատու և պտղատու մշակաբույս է: Հայտնի է մինչև 60 տեսակ: Մշակովի Ձ. (ձիթապտղի ծառ) աճեցնում են Միջերկրածովայրում, Ղրիմում, Անդրկովկասում, Միջին Ասիայում: Պտղամիսը (ձիթապտուղ) պարունակում է մինչև 80 % յուղ: Բերքատվությունը 1 ծառից 20–40 *կգ* է:

ՁԻԹԵՆԻ (Olea), ձիթենազգիների ընտանիքի բույսերի ցեղ: Հայտնի է ավելի քան 60 տեսակ: Մշակության մեջ տարածված է եվրոպականը: Մշտադալար մերձարևադարձ. պտղատու ծառ է, բարձր.՝ 10–12 *մ*: Պտուղները պարունակում են ձեթ, սպիտակուցներ, B, C վիտամիններ, կարոտին, պեկտինային նյութեր, շաքարներ: Ձիթապտուղն օգտագործվում է սննդի և բժշկության, ձեթը՝ օծանելի-

քի արտադր-յան և տեքստիլ արդ-յան, բնափայտը (ամուր է, ունի լավ փայլ)՝ ատաղձագործության մեջ: Ձ. ապրում է 400 (1000) տարի: Ձերմասեր է: ՀՀ-ում կարելի է մշակել չոր մերձարևադարձ. կլիմայով մարզերում (Տավուշ, Սյունիք):

«ՁԻԹԵՆԻ», մանկ. բարոյագիտ., կրոն. հանդես (1903–04, Ռուսչուկ, ապա՝ Սոֆիա): Տնօրեն-խմբ.՝ Հակոբ Շահվելետյան:

ՁԻԹԵՆՅԱՅ ԼԵՌ (լատ.՝ Mons Oliveti), լեռ Երուսաղեմ ք-ի արլ. կողմում՝ Կեդրոն գետի ափին: Ունի 3 գագաթ (միջին բարձր.՝ 809 *մ*): Անցյալում պատած է եղել *ձիթենիներով*: Հրեաների հնագույն սրբավայրն է: Ըստ ավետարան. ավանդության՝ արմ. ստորոտի Գեթսեմանի կոչվող պուրակը եղել է *Հիսուս Քրիստոսի* սիրած մենաբանը, որտեղ նա Հուդայի մատնությամբ ձերբակալվել է և խաչվել Գողգոթայում (հետագայում այստեղ հիմնվել է Սբ Գերեզմանի եկեղեցին): Ավանդության համաձայն՝ Քրիստոսը հարություն առնելուց հետո համբարձել է Ձ. լ–ից, որի գագաթներից մեկին իբր դրոշմվել է նրա աջ ոտնահետքը: Ի թիվս այլ եկեղեցիների՝ Ձ. լ–ան վրա V–VI դդ–ում եկեղեցի են հիմնել նաև հայերը: Հայտնաբերվել է հայ. գրությամբ ու հայկ. զարդաքանդակներով (սիրամարգ, կաքավ և այլ պատկերներ) VI դ–ի խճանկարի նմուշ: Ձ. լ. քրիստոնյա ժողդ–ների ընդհանրական սրբավայր է:

ՁԻԹՀԱՆՔ, **ձիթհան**, մամլիչավոր արտադր. կառույց՝ ձիթատու բույսերի (կտավատ, քունջութ, արևածաղիկ, կանեփ ևն) սերմերից տնայնագործ. եղանակով ձեթ ստանալու համար: Մամլիչավոր Ձ-ները հայտնի են XIII դ–ից: Կտավատի Ձ-ները տարածված են եղել նաև Հայաստանում. եղել են քարաշեն կամ կավաշեն, վերգետնյա, կիսագետնափոր, գետնափոր և ժայռափոր (Սյունիք, Արցախ, Հայկ. Տավրոս ևն):

«ՁԻՁԻ ՅՈՒՄԻՆ», ճապ.ն. տեղեկատվ. գործակալություն: Հիմնադրվել է 1945–ին Տոկիոյում:

ՁԻՄՄՈՒ, ճապ.ն.ացի միապետների դից. նախնին՝ արևի աստված Ամատերասուի սերնդից: 1873–1948–ին և 1967–ից՝ ճապ.ն.իայի Կառ-յան որոշմամբ Ձ-ի գահ բարձրանալու օրը (մ. թ. ա. 660–ի փետր. 11) նշվում է որպես կայսրության հիմնադրման օր:

ՁԻՐԱՎԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 371, հայկ. և պարսկ. զորաբանակների միջև Արածանիի հովտում՝ Այրարատ նհնգ-ի Բագրևանդ գվռ-ի Ձիրավ գ-ի մերձակայքում: Հայկ. բանակն առաջնորդել են Հայոց թագավոր *Պապը*, սպարապետ *Մուշեղ Մամիկոնյանը* և ասպետ *Սմբատ Բագրատունին*: Նրան աջակցել է հռոմ. մեկ զորամաս: Պարսկ. բանակին աղվանների և ղեկերի (լեզգիներ) հետ օժանդակել է նաև Հայոց գահին հավակնող *Մերուժան Արծրունին*: Ավարտվել է հայկ. կողմի հաղթանակով: Պարսից արքա Շապուհ II–ը ճանաչել է Հայաստանի անկախությունն ու Պապի գահակալումը:

ՁԻՈՒ ԹԱԼԹ (pes equinus), սրունք–թաթային հոդի այլաձևություն: Լինում է բնածին (առաջնային պոլիոմիելիտի պատճառով) և ձեռքբերովի. զարգանում է մանկ. լուծանքի, ոտնաթաթի հոդերի բորբոք. կենսընթացների, վնասվածքների հետևանքով: Հաճախ Ձ. թ. համակցվում է ոտնաթաթի ներսադարձության (pes equinovarus) կամ դրսադարձության (pes equinovalgus) հետ: Բուժումը հիմնականում վիրահատական է:

ՁԿԱՆ ՅՈՒՂ, հեղուկ ճարպ. ստացվում է ձողաձուկազգիների լյարդից, ինչպես նաև ծով. կաթնասունների (կետ, փոկեր) ենթամաշկ. ճարպարջջանքից: Պարունակում է չհագեցած ճարպաթթուներ, վիտամիններ, խոլեստերին, ֆոսֆամիդներ ևն: Օգտագործվում է A և D անվիտամինությունների, ինչպես նաև արտաքին վերքերի բուժման համար: Կիրառվում է նաև կաշվի, օճառի արտադր-յուններում:

ՁԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **իխթիոլոգիա** (< հուն. ichthys – ձուկ և *…լոգիա*), կենդբ-յան բաժին. ուսումնասիրում է ձկների (նաև բրածո), բոլորաբերանների կարգաբանությունը, կառուցվածքը, կենսակերպը, էվոլյուցիան, էկոլոգ. նշանակությունը: Ձ. ձկնորսության և ձկնաբուծության հիմքն է:

ՀՀ–ում Ձ–յան խնդիրներով զբաղվում են Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստ–ում. հետազոտել են ձկնային տնտ–յան և նրա հետ կապված Սևանա լճի բնական պաշարների պահպանման և օգտագործման հարցերը, գիտականորեն հիմնավորել է Հայաստանի ջրամբարներում (Ակնա, Արփի լճերում, Ապարանի, Կեչուտի, Մանթաշի ջրամբարներում) ձկնաբդ–յան ստեղծման հարցը:

ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ, 1. տնտ–յան ճյուղ. զբաղվում է *ձկների* բուծմամբ, ջրամբարների ձկան պաշարների, քանակի ավելացմամբ և որակի բարելավմամբ: Ներառում է բնական ջրավազանները, լճակ. և արդ. Ձ-ները: ՀՀ–ում Ձ. գղտ–յան հեռանկարային ոլորտներից է: 2014–ին կային 250 ձկնաբուծ. տնտ–յուններ: 2. Գիտ–յուն, որը մշակում է ձկնաբուծ. միջոցառումների կենսբ. հիմունքները (ձկների բուծում, կլիմայավարժեցում ևն) և կենսատեխ. խնդիրները (ձկնկիթահանում, ձկների կերակրում ևն):

ՁԿՆԱԳԵՏ, 1. գետ ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում՝ Սևանա լճի ավազանում: Սկիզբ է առնում Փամբակի լ–շղթայի հս–արլ. լանջերից՝ 2310 *մ* բարձր–ից: Երկ.՝ 22 *կմ*, ավազանը՝ 90,5 *կմ²*, ջրի ծախսը՝ 1,11 *մ³/վ*: 2. Գետ Հայկ. լ–աշխարհում, Սակու գետի ձախ վտակը: Երկ.՝ 146 *կմ*: Սկիզբ է առնում Գայլատու լճից, Բայազետից հս մտնում է Փոքր լճակների ու ճահիճների համակարգի մեջ և դուրս գալիս Դեղին անվամբ ու միախառնվում Սակու գետին:

ՁԿՆԱԹՈՂ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, հիդրոտեխ. կառույցների համալիր հիդրոհնգույցների կազմում: Նախատեսված է ձկները վերին բիեֆից ստորին բիեֆ և հակառակ ուղղությամբ բաց թողնելու համար՝ հիմնականում ձվադրման տեղաշարժի ժամանակ:

ՁԿՆԱԼՅՈՒՂ, ձկան վերամշակման մնացորդներից ստացվող կեր. արտադրանք: Հարուստ է պրոտեինով, կալցիումով, ֆոսֆորով, A, D և B խմբի վիտամիններով: Օգտագործում են կենդանիների օրակերում և համակցված կերերի կազմում: Կերակրում են խոճկորներին, ածան հավերին և ճտերին:

ՁԿՆԱՎԱՃԱՌԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 910, տեղի է ունեցել Նիգ գվռ–ի Ձկնավաճառ կոչվող վայրում: Հայաստանը գրավելու նպատակով Ատրպատականի ամիրա Յուսուփը հաստատվել է Դվինում և Հայոց թագավոր *Սմբատ Ա.* Բագրատունու բանակի դեմ ուղարկել *Գագիկ Արծրունու* գնդերը: Նախահարձակ լինելով՝ Բագրատունիներն սկզբում հաջողություն են ունեցել, սակայն մարտի թեժ պահին Ուտիքի Սևորդիների զորքերը լքել են կովի դաշտը, Սմբատ Ա–ի ուժերը ջախջախվել են:

ՁԿՆԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, սննդի արդ–յան ճյուղ: Հիմն. խնդիրներն են *ձկնորսությունը* և ձկնա– ու ծովամթերքի վերամշակումը: 2009–ին աշխարհում որսացել են 113,6 մլն *տ* ձուկ, ՀՀ–ում (2014)՝ 6814 *տ*:

ՁԿՆԵՐ (Pisces) ջր. կենսակերպ վարող քորդավորների տիպի սառնարյուն կենդանիների վերնադաս: Բաժանված է աճառ. և ոսկրային դասերի: Մարմնի ջերմաստիճանն անկայուն է, շնչում են խռիկներով (գոյություն ունեն երկշունչ ձևեր): Շատ Ձ. ունեն լողափամփուշտ: Վերջավորություններն ունեն լողակների ձև (երբեմն բացակայում են), որոնք կատարում են ջրում մարմնի դիրքի պահպանման, դանդաղ տեղաշարժման, կանգառի, շրջադարձ կատարելու և հավասարակշռության դեր, մասնավորապես՝ ջրի խորը շերտեր սուզվելու և բարձրանալու ֆունկցիա, մեջքի և ենթապոչի լողակները՝ ղեկի և տեղաշարժման ֆունկցիա: Չափերը 1 *սմ*–ից (ֆիլիպինյան մանր ծովաձուկ) մինչև 20 *մ* (հսկա շնաձուկ): Հայտնի է ավելի քան 20 հզ. տեսակ: Տարածված են Համաշխ. օվկ–ում և քաղցրահամ ջրերում: Ի հայտ են եկել հավանաբար սիլուրում՝ քաղցրահամ ջրերում: Շատերն արդյունագործ. և բազմացման Ձ. են: Ավելի քան 200 տեսակ և ենթատեսակ գրանցված են ԲՊՄՄ Կարմիր գրքում: Ձ–ի մասին գիտ–յունը *ձկնաբանությունն* է: ՀՀ ջրավազաններում հայտնաբերվել են ոսկրային ձկների 5 կարգի 9 ընտանիքի 34 ցեղի 39 տեսակ: Հայկ. կարմրակնը, իշխանը և Սևանի բեղլուն բնաշխարհիկ են: Վերջին 2–ը գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

ՁԿՆԵՐ (լատ.՝ Pisces), *կենդանաշրջանի* համաստեղություններից՝ Անդրոմեդա, Եռանկյուն, Խոյ, Կետ, Ձրհոս, Պեգաս համաստեղությունների միջև: Ամենապայծառ աստղերը 3,6–3,8–րդ աստղ. մեծության են: Ձ. համաստեղությունում է *գարնանային գիշերահավասարի* կետը: Լավ երևում է հատկապես աշնանը:

ՁԿՆԿԻԹ, 1. ձկների, փափկամարմինների, փշամորթների, ջր. այլ կենդանիների, նաև երկկենցաղների իգական սեռ. բջիջներ (ձվեր): 2. **Խավիար**, ծովամթերք, որ պատրաստում են բազմաթիվ ձկնատեսակների վերամշակված չբեղմնավորված Ձ–ից: ԼՂՀ Մարտակերտի շրջանի Մաղաղիս գ–ի ջրամբարում սկսվել է սև Ձ–ի ստացումը:

ՁԿՆԿՈՒԼՆԵՐ (Phalacrocoracidae), հավալուսնանմանների կարգի թռչունների ընտանիք: Երկ.՝ մինչև 1 *մ*: Հայտնի է 2 ցեղ. առաջինն ունի 1 տեսակ (չի թռչում), ապրում է Գալապագոսյան կղզում: Երկրորդը (29 տեսակ) տարածված է լայնորեն: ՀՀ–ում հանդիպում է 2 տեսակ՝ մեծ և փոքր Ձ.: Գիլլի լճի չորացումից հետո մեծ Ձ–ի բնադրագաղութներն անհետացել են, փոքր Ձ–ինը՝ Արաբատյան դաշտում մեծ թիվ են կազմում: Մեծ Ձ. գրանցված են ՀՀ Կարմիր գրքում, 1 տեսակ ու ենթատեսակ՝ ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՁԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ, ձկնարդ–յան ճյուղ, արդյունահանում է տարբեր տեսակի ձկներ, ծով. կաթնասուններ, փափկա-

մարմիններ, խեցգետնակերպներ, ջր. բուսականություն: Ավելի լայն իմաստով՝ ջր. պարզագույն և բարձրակարգ կենդանիների արդյունահանում Համաշխ. օվկ–ից ու ծովերից: Ձ. կարգավորվում է միջազգ. մի շարք համաձայնագրերով: Հայաստանում հայտնի է հնագույն ժամանակներից՝ գետերի, լճերի ափերին Ձ–յան համար նպաստավոր վայրերում:

ՁՄԵՌ, *գարնա ձկնատեսակ*: Հս. կիսագնդում տևում է ձմեռ. արևադարձի օրից (դեկտ. 22) մինչև գարնան. գիշերահավասարի օրը (մարտի 21), Հվ. կիսագնդում՝ ամառ. արևադարձի օրից (հունիսի 22) մինչև աշնան. գիշերահավասարի օրը (սեպտ. 23): Ձ–վա ամիսներն են՝ դեկտ., հունվ. և փետր.:

ՁՄԵՌԱՁԻՆ ԵՐԿԱՐԱՁԱՓ, *երկրաչափների* ընտանիքի թիթեռ. պտղատու մշակաբույսերի և լայնատերև բնափայտավոր ծառերի վնասատուներ: Տարածված են Եվրասիայում և Հս. Ամերիկայում: Արուների թևերը դեղնավուն են կամ գորշամոխրագույն, էգերինը՝ թերզարգացած: Մնվում են (թրթուրները) բողբոջներով, տերևներով, ծաղիկներով և սերմնարանով:

ՁՄԵՌԱՁԻՆ ԻՇԽԱՆ (Salmo ischan ischan), սաղմոնաձկների ընտանիքի ձուկ, Սևանի իշխանի 4 ենթատեսակներից մեկը: Ապրում է միայն Սևանա լճում, որտեղ առաջացնում է 2 էկոլոգ. խմբեր: Համեմատաբար խոշոր ձուկ է: Մարմինը գլանաձև է՝ կողքերից մի փոքր սեղմված: Երկ.՝ 50–55 (երբեմն՝ 90) *սմ*, կ. զ.՝ մինչև 15 *կգ*: Մնվում է մերձհատակային կենդանիներով, խոշոր առանձնյակները՝ նաև մանր ողնաշարավորներով: Ներկայում համարվում է իշխանի ոչնչացված տեսակ՝ ձվադրավայրերի չորացման և գերորսի հետևանքով:

ՁՄԵՌԱՁԻՆ ՊԱԼԱՍ Ս. Պետերբուրգում, ռուս. բարոկկոյի ճարտ. հուշարձան: 1753–1762–ին կառուցել է Բ. Ֆ. *Ռաստրելլին*: Եղել է ռուս կայսրերի, 1917–ի հուլիս–հոկտ–ին՝ Ժամանակավոր կառ–յան նստավայրը: 1922–ին՝ շենքի մի մասը, իսկ 1945–ին ամբողջությամբ տրվել է *Էրմիտաժին*: Համաշխ. ժառանգության կառույց է:

ՁՄԵՌԱՁԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ, սպորտի ձմեռ. մարզաձևերի համաշխ. համալիր մրցումներ: Անցկացվում է 1921–ից՝ ՄՕԿ–ի որոշմամբ: 1924–92–ին անցկացվել են *օլիմպիական խաղերի* տարում (1940–ին, 1944–ին չեն կայացել), 1994–ից՝ 2 տարին՝ մեկ:

ՁՄԵՐՈՒԿ (Citrullus), դդմազգիների ընտանիքի միամյա կամ բազմամյա բույսերի ցեղ: Հայտնի են վայրի 1 և մշակովի 2 (սեղանի ու կերային) տեսակներ: Տարածված է Հվ. Եվրոպայում, Աֆրիկայում, Ասիայում, Ավստրալիայում: Սեղանի տեսակը մշակում են բոլոր մայրցամաքներում: Բերքատվությունը՝ 150–300 *ց/հա*:

ՁՅԱԼՈՇԻՆՆԿԻ Իգնատ Եխիելևիչ (ծ. 1931), ռուս. ֆիզիկոս–տեսաբան: ՌԳԱ թղթ. անդամ (1991, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1974–ից): Աշխ–ները վերաբերում են պինդ մարմնի ֆիզիկային, մագնիսականությանը, վիճակագր. ֆիզիկային:

ԽՍՀՄ Պետ. (1984), ԳԱ Մ. Վ. Լոմոնոսովի անվ. (1972) մրց–ներ:

ՁՅԱՆ Ա.Յ.Ծ, սնամեջ եղջերավորների ընտանիքի կենդանի: Երկ.՝ մինչև 1,75 *մ*: Բուդդը երկար է, սպիտակ: Ապրում է Հս. Ամերիկայի արմ. մասում (Ժայռոտ լ–ներ): Հանդիպում է հիմնականում արգելոցներում: Պահպանվում է:

ՁՅԱՆ ԴՐԱԽՏԱՊԱՆ (Plectrophenax nivalis), դրախտապանների ընտանիքի թռչուն: Երկ.՝ 15–19 *սմ*: Բնադրում է տունդրաներում, ձմռանը չվում է հվ՝ տափաստաններ:

ՁՅԱՆ ԻՆՁ, *իրբիս*, կատվազգիների ընտանիքի կաթնասուն կենդանի: Մարմնի երկ.՝ մինչև 130, պոչինը՝ մինչև 105 *սմ*: Ապրում է Կենտր. և Միջին Ասիայի լեռներում: Անհետացման եզրին է: Բազմանում է անազատ պայմաններում:

ՁՅԱՆ ՃՆՃՂՈՒԿ (Montifringilla nivalis), ճնճղուկների ընտանիքի թռչուն: Նստակյաց է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 17, թևերի բացվածքը՝ 34–38 *սմ*, կ. զ.՝ 25–31 *գ*: Ընդգծված սև, մոխրադարչնագույն ու սպիտակ նախշերով թռչուն է: Ապրում է բարձրադիր լ–լանջերին: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՁՅԱՆ ՈՉԽԱՐ, *հաստեղջյուր*, սնամեջ եղջերավորների ընտանիքի կենդանի: Երկ.՝ մինչև 1,8 *մ*, կ. զ.՝ մինչև 140 *կգ*: Արուների եղջյուրներն ավելի մեծ են: Ապրում է Հս–արլ. Ասիայում և Հս. Ամերիկայում (մինչև Մեքսիկա): Որսակենդանի է (միսը, կաշին): Որոշ վայրերում թվաքանակը կրճատվել է: Գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՁՅԱՆ ՍԱՀՄԱՆ, Երկրի մակերևույթի պայման. սահմանը, որից բարձր *ձյան* կուտակումը գերազանցում է նրա հալչոցքն ու գոլորշիացումը:

ՁՅՈՒ–ԴՈ (< ճապոն. ձյու – փափկություն, դո – ուղի), մարզական ըմբշամարտի տեսակ: Առաջացել է Ճապոնիայում XIX դ–ի վերջին. արդիականացված *ջիու–ջիցու*, որը վերածվել է մարզաձևի: Ըմբշամարտի հնարքների հետ օգտագործում են նաև այլ, օր.՝ ցավային հնարքներ: Միջազգ. ֆեդերացիայում (IJF, հիմն.՝ 1956) ընդգրկված է մոտ 180 երկիր (2015): Աշխարհի առաջնություններն անցկացվում են 1956–ից, Եվրոպայինը՝ 1951–ից, օլիմպ. խաղերի ծրագրում է 1964–ից:

ՁՅՈՒԹ, պինդ վառելիքի (փայտ, տորֆ, քարածուխ) ջերմ. վերամշակման (չոր թորում) արդյունքում ստացվող թանձր մուգ գույնի նյութ: Օգտագործվում է կրեոզոտի, կրեոլինի ստացման, կաշվի ճարպավորման, բժշկության և անասնաբուժության մեջ՝ ախտահանման և մաշկ. հիվանդությունների բուժման համար:

ՁՅՈՒՆ, մթն. պինդ տեղումներ փաթիլների ձևով: Լինում է բազմաձև, հիմնականում՝ վեցանկյուն կամ վեցաթև աստղանման սառցային բյուրեղների ու փաթիլների տեսքով, թերթիկավոր և ձողաձև: ՀՀ–ում Ձ. տարեկան տեղումների 10–70 %–ն է:

ՁՅՈՒՆԱԿԱՆՆԵՐ, *Ձիւնականք*, նախապարս. տոհմ Հին Հայաստանում: Հիշատակվում են իբրև հայ Արշակունիների ամառանոց. ապարանքների պահապաններ ու ձյունակիրներ: Ձ–ից Վրեն իշխանը հիշվում է որպես *Վահանանց պարերազմի* (481–484) մասնակից:

ՁՅՈՒՆԱԿԵՐՏ, p. Տուրուբերան նահգ–ի Տարոն գվռ–ում: Ըստ *Հովհան Մամիկոնյանի*՝ պարսից զորավար Վախթանգը, վերակառուցելով Ձ., կնոջ՝ Պորպեսի անունով վերանվանել է Պորի, իսկ քաղաքի կաթողիկե եկեղեցին դարձրել ատրուշան:

ՁՅՈՒՆԱՄՐԻԿ, *ձյունահողմ, բուք*, օդի գետնամերձ շերտում քամու միջոցով ձյան տեղափոխությունը: Տարբերում են գետնահուպ (մինչև 1,5–2 *մ* բարձրյան շերտում), ներքնատարած (2–3 *մ* բարձրյան շերտում) և ընդհ. (քամին ձյունը բարձրացնում է բավական վեր, որն էլ ուղեկցում է տեղացող ձյանը) Ձ–ներ:

ՀՀ–ում Ձ–ներ առաջանում են հիմնականում Սևանի ավազանում (ավելի քան 50 օր), լ–անցքերում (առավելապես՝ Սիսիանի, Սևանի, 84 օր), Արագածում (122 օր), Լոռու, Տավուշի մարզերում (2–7 օր):

ՁՆԱԲՈՐԲՈՍ, աշնան. հացահատիկ. բույսերի սնկային հիվանդություն: Հարուցիչները Fusarium սեռի պարկավորներն են, որոնք սովորաբար վնասում են տերևները, ապա ամբողջ բույսը պատում սարդոստայնանման վարդագույն փառով: Տարածված է հացահատիկացան բոլոր շրջաններում:

ՁՆԱՅԻՆ ԴԱՇՏԱՄՈՒԿ (Microtus nivalis), համստերանմանների ընտանիքի դաշտամկների ենթաընտանիքի կրծող կաթնասուն կենդանի: ՀՀ–ում տարածված է լ–տափաստան., ենթալպ., ալպ. գոտիների քարացրոններում, փլվածքներում ևն: Ապրում է ժայռերի ու քարերի արանքներում: Մարմնի երկ.՝ մինչև 14,7, պոչինը՝ 6,8 *սմ*, կ. զ.՝ մինչև 66 *գ*: Կարող է լինել ժանտախտի պատահական կրող:

ՁՆԾԱՂԻԿ (Galanthus), շքանարգիզազգիների ընտանիքի բազմամյա, սոխուկավոր խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 20 տեսակ՝ Փոքր Ասիայում, Կենտր. և Հվ. Եվրոպայում, ՌԴ–ում, ՀՀ–ում՝ 3 տարբեր մարզերում: ՀՀ տեսակներն Այսրկովկասի բնաշխարհիկներ են:

ՁՈՂԱՁԿՆԵՐ, *բրաձկներ, երկարապոչներ, մակրուրուսներ*, ձողաձկնակերպների կարգի ծով. ձկների ընտանիք: Մարմինը երկարացած է (40 *սմ*–1 *մ*), որը դեպի հետին ծայրը փոխանցվում է թելի: Հայտնի է 300 տեսակ՝ Արկտիկայից մինչև Անտարկտիդա:

ՁՈՂԱՄԻՋԱՏՆԵՐ, միջատների կարգ: Երկ.՝ մինչև 35 *մմ*: Հայտնի է մոտ 2,5 հզ. տեսակ՝ առավելապես արևադարձներում ու մերձարևադարձներում: Որոշ Ձ. վնասում են բույսերը, որոնց վրա աննկատ են՝ ճյուղերին, ոստիկներին և տերևներին նմանվելու պատճառով: Ուսուրական և թզուկ Ձ. պահպանվում են:

ՁՈՂԱՓԱՅՏ, 1. հենարանների վրա հորիզոն. ամրացված ձվաձև հատույթներով ձողերով մարմնամարզ. մարզագույք: 2. *Ձիասպորտում*, հենարանների վրա որոշակի բարձրությամբ ամրացված 2 զուգահեռ ձողերից կազմված արգելք:

ՁՈՂԿԵՐՏ, *Ցողկերտ, Ցոլակերտ*, բք *Մասյացոցն* գվռ–ում՝ Մասիս լ–ան հս. ստորոտին՝ Երասխի ափին: Ըստ ավանդության՝ հիմնադրել է Հայկ Նահապետի թոռ և Արամայիսի որդի Ցոլակը: *Եղիշեն* Ձ. հիշատակում է որպես Արշակունիների (I–V դդ.) ձմեռոց և զորակայան:

ՁՈՊԱԲԵՐ, հայկ. հեթանոս. տոմարի ամիսների 9–րդ օրվա անունը:

ՁՈՐԱԳԵՏ, գետ ՀՀ հս. մասում: Փամբակի հետ միախառնվելով՝ առաջացնում է Դեբեդը: Երկ.՝ 57 *կմ*, ավազանը՝ 1460 *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 16,8 *մ³/վ* (առլգն՝ 395 *մ³/վ*, տարեկան հոսքը՝ մոտ 530 մլն *մ³*: Գետաբերանի մոտ է Ձորագետի ջրէկը, ափին՝ Ստեփանավան ք–ը:

ՁՈՐԱԳԻՐԻ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, Վասպուրական նահգ–ի Մեծ Աղբակ գվռ–ում: Թվագրվում է VI դ–ի 1–ին կեսով: Քառաթև–քառախորան կենտրոնագմբեթ կառույց է (գմբեթ. մասը վերակառուցվել է 1682–ին):

ՁՈՐԱՊԱՀԱԿ, Տաւրոյ բերան, Բիթլիսի լեռնանցք, լ–անցք Հայկ. Տավրոս լ–շղթայի կենտր. մասում՝ *Աղձնիք* նահգ–ի Գզեղ գվռ–ում՝ 1800 *մ* բարձր–յան վրա: Ձ–ով էր անցնում Հայաստանի միջնաշխարհը Միջագետքին կապող ամենակարճ ճանապարհը:

ՁՈՐՈՓՈՐ, գվռ *Գուգարք* նահգ–ում՝ Ձորագետի (այժմ՝ Աղստև գետ) միջին հոսանքում: I դ–ում Կողբոփորի, Ծորոփորի, Կանգարքի և Ձավախքի մի մասի հետ եղել է առանձին նախարար. ժառանգ. սեփականություն: 880–ական թթ–ի վերջին *Աշոտ Ա* Բագրատունին միացրել է արքայատան ոստանին: X դ–ի սկզբին գվռ–ում կառուցվել են *Կայան, Կայծոն* և այլ ամրոցներ: 966–ից XI դ–ի վերջին Ձ. եղել է *Կյուրիկյան թագավորության* կազմում: XII–XIII դդ–ում կոչվել է *Կայան* գվռ: Ձ–ի նշանավոր պատմաճարտ. հուշարձաններից է *Մակարավանքը* (X–XI դդ.), իսկ հնագույն բնակավայր Լալի գ–ը (այժմ՝ Վազաշեն) նշված է *Պտղոմեոսի* քարտեզում:

ՁՈՐՔ, Կապան, գվռ *Սյունիք* նահգ–ում: Ընդգրկել է Ողջի գետի ակունքի շրջանը և նրա ձախակողմյան վտակ Գեղի գետի ավազանը: Հարուստ է պղնձահանքերով: X–XII դդ–ում դարձել է *Սյունիքի թագավորության* օրրանը, պատկանել Սյունյաց իշխան. տան երկրորդ. ճյուղերից մեկին՝ Չագիկյաններին: Ձ–ում էր թագավորության մայրաքաղաք Կապանը և նրա միջնաբերդը՝ Բաղաբերդը: XVII–XVIII դդ–ում Ձ. մասնատված էր 2 գվոկ–ի՝ Բաղաբերդ (Ողջի գետի ակունքի շրջանը) և Գեղամաձոր (Գեղվա վտակի ավազանը):

ՁՈՅԵՆԻՉԵ Գեորգի Սամսոնի (1910–1976), վրացի երկրաբան: ՎԽՍՀ (1955) և ԽՍՀՄ (1968) ԳԱ–ների ակադ.: Աշխ–ները վերաբերում են հրաբխածին–նստվածք. լիթոգենեզի հարցերին: ԽՍՀՄ Պետ. (1950) և Լենինյան (1972) մրց–ներ:

ՁՎԱԲՁԻՋ, **ձու**, կենդանիների և բույսերի իգական սեռ. բջիջ, որից կարող է զարգանալ նոր օրգանիզմ՝ բեղմնավորման կամ կուսածնության միջոցով: Պարունակում է քրոմոսոմների հապլոիդ (ոչ կրկնակազմ) հավաքակազմ:

ՁՎԱԾԵԼ, կերակուր: Ավանդական Ձ. պատրաստում են միայն ձվով և յուղով: Այժմ, ըստ նախասիրության, ավելացնում են նաև լոլիկ, սոխ, այլ համեմունքներ, երբեմն՝ երշիկով, մսով, պանրով ևն: Կարելի է ուտել մեղրով կամ մածունով: Որպես շուտ ապաքինող կերակուր՝ Ձ–ով են կերակրում նոր ծննդաբերած կանանց:

ՁՎԱԿԵՆԴԱՆԱԾՆՈՒԹՅՈՒՆ, կենդանիների՝ սերունդ տալու եղանակ, որի դեպքում սաղմը լրիվ զարգանում է մոր օրգանիզմում՝ ձվի մեջ, սակայն ազատվում է ձվաթաղանթներից՝ ձվադրելուց հետո: Բնորոշ է որոշ լվիճների, տզերի, մի շարք սողունների:

ՁՎԱՐԱՆ, իգական սեռ. զույգ գեղձ, որտեղ ձևավորվում և հասունանում են ձվաբջիջները: Մարդու և ողնաշարավոր կենդանիների Ձ–ները տեղակայված են որովայնի խոռոչում: Արտադրում է հորմոններ (էքստրոգեններ և պրոգեստերոն):

ՁՎԱՐԱՆԱԲՈՐԲ (oophoritis), ձվարանների բորբոք. հիվանդություն: Կարող է առաջանալ արտաքին պատճառներից (վարակի հարուցիչներ՝ ստրեպտոկոկներ, ստաֆիլոկոկներ, գոնոկոկներ ևն, երբեմն՝ վիրուսներ, սնկիկներ, նաև քիմ. և ջերմ. գործոնների ազդեցությունը): Ներքին պատճառներ կարող են դառնալ հյուսվածքի մեռուկացումը (նեկրոզ), թրոմբոզը և արյունազեղումները (օր.՝ ձվարանի բուշտի ոլորման դեպքում): Ընթանում է սուր, ենթասուր և քրոնիկ. շրջաններով:

ՁՎԱՐԴ, հոնիական, կորնթական օրդերների խոյակների և քիվերի զարդամոտիվ՝ բաղկացած ձվաձև ելուստների շարքից, որն ընդմիջարկվում է սայրը դեպի ցած ուղղված սլաքաձև տերևներով:

ՁՈՒԼԱԹԵՐԹԱՎՈՐՆԵՐ, ծածկասերմ երկշաքիլ բույսերի ենթադաս: Ընդգրկում է մասնակի կամ ամբողջությամբ ձուլված պսակաթերթերով բույսերի շուրջ 40 ընտանիք: Ձ–ից պսակ ունեն ձմերուկը, դդումը, կարտոֆիլը, ճրագախոտը ևն: Ժամանակակից ֆիլոգենետիկ. համակարգում Ձ. որպես առանձին ենթադաս չեն ընդունվում:

ՁՈՒԼԱԾՆՈՏԱՅԻՆՆԵՐ (Tetraodontiformes), ոսկրային ձկների կարգ: Վերին ծնոտի ոսկրերը սերտ միացած են կամ ձուլված (այստեղից՝ անվանումը): Երկ.՝ 4 *սմ*–2,5 *մ*: Թեփուկները ձևափոխվել են փշերի, ոսկր. թիթեղիկների կամ ասեղների: Հայտնի է մոտ 100 տեսակ՝ Համաշխ. օվկ–ի արևադարձ. և մերձարևադարձ. ջրերում: Միսն օգտագործում են սննդի մեջ: Որոշ տեսակների մաշկում, որովայնամզում, լյարդում պարունակվում է տետրադոքսին թունավոր նյութը:

ՁՈՒԼՈՒՄ գեղարվեստական, մետաղից քանդակ կերտելու առավել տարածված եղանակ. նույն կերպ ստեղծված գեղ. ստեղծագործություն, նաև մետաղե ամանեղեն, սեղանի սպասք, լուսամփոփներ և այլ իրեր պատրաստելու միջոց: Ձ. սկզբնավորվել է մետաղի նախն. կիրառման և վերամշակման դարաշրջանում (տես *Բրոնզ, Բրոնզի դար*): Հայաստանի տարածքում պեղումներով հայտնաբերված բրոնզե առարկաները վերաբերում են մ. թ. ա. IV հազարամյակին, իսկ զուտ պղնձե, բրոնզե իրերը (ասեղներ, քորոցներ, կաթսաներ, զենքեր, զարդեր ևն)՝ միջնադարին, որոնց մեծ մասը ձուլածո է:

ՁՈՒԿ–ԹԻԹԵՂՆԵՐ, պերկեսակերպների կարգի մի քանի ցեղերի ընդհ. անվանումը: Երկ.՝ 15–25 *սմ*: Վառ գունավորված ձկներ են՝ լայն լողակներով: Ապրում են արևադարձ. ջրերում (սովորաբար՝ բուստ. խութերի մոտ): Որոշ տեսակներ ունեն արդյունագործ. նշանակություն: Բազմացնում են ծով. աքվարիումներում:

ՁՈՒԿԿԱՐԻ, Ձուկկարո (Zuccari, Zuccaro), իտալացի նկարիչներ, եղբայրներ: **Տադեո Ձ.** (1529–1566), Բարձր Վերածննդի և մաներիզմի նվաճումները միահյուսել է նատուրալիզմի («Աստվածամոր վերափոխումը», 1564–65) և իլյուզիոնիզմի (ֆարնեզենների առանձնատների որմնանկարները, 1559–ից, Կապրարոլ) տարրերի հետ: **Ֆեդերիկո Ձ.** (1540/42–1609), մաներիզմի ներկայացուցիչ (Ֆլորենցիայի «Սանտա–Մարինա դել Ֆիորեի տաճարի գմբեթի որմնանկարները, 1574): Հռոմի «Սբ Ղուկաս» ակադ–ի հիմնադիր–ղեկ. (1577–ից):

ՁՈՒՂՊԱԴՐՈՒՄ, ձկների՝ հասուն *ձկնկիթի* և սերմնահեղուկի (սպերմայի) սփռումը (տարածումը) ջրահատակին, բույսերի, քարերի վրա, ձուղպարաններում՝ արտաքին բեղմնավորման համար: Որոշ ձկներ (գաղթող) Ձ–ման համար ծովերից անցնում են գետեր (սաղմոն, թառափ) կամ գետերից ծովեր (գետ. օձաձուկ):

ՁՈՒՌԼԻՆԻ (Zurlini) Վալերիո (1926–1982), իտալացի կինոռեժ.: 1948–ից կինոյում աշխատել է որպես վավերագրող: Նկարահանել է նաև խաղարկ. ֆիլմեր («Սաստիկ ամառ», 1959, «Ընտանեկան ժամանակագրություն», 1962, «Հանգստի առաջին գիշերը», 1972, «Տարտարոսի անապատը», 1976, ևն), որտեղ ստեղծել է նուրբ և բարդ հոգեբ. իրավիճակներ: Թատրոնում և հեռուստաթատրոնում բեմադրել է Ա. Պ. Չեխովի, Վ. Ս. Ռոզովի և ուր. պիեսներից:

Ղ

Ղ, հայ. այբուբենի 18–րդ տառը, անվանումը՝ ղատ: Ունի *գրչագիր*, *երկաթագիր*, *բոլորգիր*, *շղագիր*, *նոտրգիր* տառատեսակները: Հայ–ի հետնալեզվային շփական ձայնեղ բաղաձայն հնչյուն (հնչույթ) է: Թվային արժեքը՝ 90:

ՂԱԲՈՒՉՅԱՆ Էդիկ Արշալույսի (ծ. 1952), տառաստեղծ: 1987–ից նախագծել և մշակել է մոտ 300 հայկ. տառատեսակներ, որոնցից GHEA Mariam և GHEA Grapalat տեսակները Հայաստանում ընդունվել են որպես պետ–պաշտոն. գրագրության տառատեսակներ: Նախաձեռնել և հիմնադրել է (2008) «Գրանշան» ոչ լատ. տառատեսակների միջազգ. ամենամյա մրցույթը:

«Գրանշան» մրցույթի 1–ին մրց. (2008), ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2012):

«ՂԱԲՈՒՍ ՆԱՄԵ», **«Ղաբուսապատում»**, բարոյախրատ. առակների ժող., ֆարս–ով հայտնի առաջին արձակ ստեղծագործությունը: Հեղինակն Ունսուր ալ–Մալլին (1021–1098) է:

ՂԱԶԱԶՅԱՆ Անուշավան Վահանի (1922–2009), վարակաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1970), պրոֆ. (1972): Աշխ–ները վերաբերում են ՀՀ–ում հանդիպող վարակիչ հիվանդությունների կլինիկակենսաքիմիայի խնդիրներին: ՀՀ վարակաբանների գիտ. ընկ–յան հիմնադիր–նախագահը (1973–78):

ՂԱԶԱԶՅԱՆ Արփիկ Հովհաննեսի (1919–1987), դերասանուհի: Գրիգոր *Ղազազյանի* քույրը: ՀԽՍՀ ժող. արտիստ (1986): 1938–ից (ընդհատումներով)՝ Արթիկի, Ալավերդու, 1953–86–ին՝ Կամոյի թատրոնների դերասանուհի (Կրուչինինա՝ Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորները», Տատիկ՝ Ա. Կասոնայի «Ծառերը կանգնած են մահանում», Շողակաթ՝ «Մեծապատիվ մուրացկաններ»՝ ըստ Հ. Պարոնյանի, ևն):

ՂԱԶԱԶՅԱՆ Գրիգոր Հովհաննեսի (ծ. 1932), ճարտ.: Արփիկ *Ղազազյանի* եղբայրը: Նրա նախագծերով Լենինականում բարեկարգվել է Խաղաղության պուրակը (1965), կառուցվել Երջանկության պալատը՝ հարսանյաց սրահով (1967), Ցեղասպանության զոհերի հուշարձանը՝ Ձրառատ գ–ում (1965) ևն: Կազմել է «Շերքեզի ձոր» տարածքի գլխ. հատակագիծը:

ՂԱԶԱԽ (հայ.՝ Կողթ), ք. Ադրբեջանում (1909–ից)՝ Աղստև գետի աջ ափին՝ 350–390 *մ* բարձր–յան վրա: Համանուն շրջանի վարչ. կենտրոնը: XVIII դ–ում եղել է Ղազախ. խանության մայրաքաղաքը: Բն.՝ 191 հզ. (2000): Հայերն այստեղ բնակություն են հաստատել քաղաքի հիմնադրման սկզբից (մեծ մասամբ՝ Շուշիից և մոտակա գյուղերից վերաբնակեցվածներ): Ղարաբաղա–ադրբ. հակամարտության ժամանակ Ղ–ի հայերը տեղափոխվել են հիմնականում ՀՀ:

ՂԱԶԱԽԱԿԱՆ ԱՐԽԱՐԱՄԵՐԻՆՈՍ, մսաբրդատու նրբագեղմ ոչխարների ցեղ: Ստացվել են Ղազախստանում: Խոյերի կ. զ.՝ 90–115 *կգ*, մաքիներինը՝ 55–65 *կգ*, բրդատվությունը, համապատասխանաբար՝ 7–8 և 3,2–3,5 *կգ*:

ՂԱԶԱԽԱԿԱՆ ՁԻ, հեծկան–բեռնակիր և լծկան ձիերի ցեղ: Ստացել և հնուց բուծում են Ղազախստանում ու հարակից շրջաններում: Դիմացկուն է, ցածրահասակ, աշխատունակ: Բազմացնում են նաև կաթ և միս ստանալու համար:

ՂԱԶԱԽԱԿԱՆ ՆՐԲԱԳԵՂՄ, մսաբրդատու ոչխարների ցեղ: Ստացվել է 1931–46–ին Ղազախստանում՝ տեղական դմակավոր ոչխարների մաքիների և պրեկոս ցեղի խոյերի տրամախաչումից: Խոյերի կ. զ.՝ 90–100, մաքիներինը՝ 60–65 *կգ*, բրդատվությունը, համապատասխանաբար՝ 7–9 և 4,0–4,5 *կգ*:

ՂԱԶԱԽԱԿԱՆ ՄՊԻՏԱԿԱԳԼՈՒԽ ՏԱՎԱՐԻ ՑԵՂ, մսատու տավարի ցեղ: Ստացվել է Ղազախստանի և ՌԴ Օրենբուրգի ու Վոլգոգրադի մարզերի տնտ–յուններում՝ Ղազախստանի տեղ. (մասամբ՝ կալմիկ.) կովերի և հերեֆորդյան ցեղի ցուլերի տրամախաչումից: Ցուլերի կ. զ.՝ 850–1000 *կգ*, կովերինը՝ 500–550 *կգ*: Սպանդ. ելքը՝ մինչև 55 %: Մնեղիքում ճարպը տարածված է համաչափ, միսն ունի սննդ. բարձր որակ:

ՂԱԶԱԽԵՐԵՆ, *ղազախների* լեզուն, *Ղազախստանի* պետ. լեզուն: Պատկանում է թյուրք. լեզվախնտանիքի դփչաղյան խմբին: Գրի հիմքում արաբ. (XIX դ–ի 2–րդ կեսից), լատ. (1928–40), ապա ռուս. (1940–ից) այբուբենն է:

ՂԱԶԱԽԵՑՅԱՆ Վլադիմիր Նահապետի (1926–2015), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1977), պրոֆ. (1982): Աշխ–ները վերաբերում են Խորհրդ. Հայաստանի գյուղացիության, ՀՄՊ–ին հայ ժողդ–ի մասնակցության, ՀՀ (1918–20) պատմության խնդիրներին:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2011):

ՂԱԶԱԽՆԵՐ, ժողդ, Ղազախստանի հիմն. բնակչությունը (11,5 մլն, 2015): Ապրում են նաև Ուզբեկստանում (800 հզ–1 մլն, 2002), ՌԴ–ում (648 հզ.), Չինաստանում (1,5 մլն, 2010), Թուրքմենստանում (մոտ 20 հզ., 2002), Տաջիկստանում (595 հզ., 2002) ևն. ընդամենը՝ 15 մլն: Լեզուն՝ *ղազախերեն*: Հավատացյալները սննդի մահմեդական են:

ՂԱԶԱԽՍՏԱՆ, **Ղազախստանի Հանրապետություն**, պետություն Եվրասիայի կենտր. մասում: Սահմանակից է ՌԴ–ին, Չինաստանին, Ղրղզստանին, Ուզբեկստանին և Թուրքմենստանին: Տարածքը՝ 2,7 մլն *կմ*^{2}, բն.՝ 17,7 մլն (2016): Մայրաքաղաքը՝ *Ասթանա:* Պետ. լեզուն՝ ղազախ.: Կառավարման ձևը՝ նախագահահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկապալատ խորհրդարանը (Մեջլիս և Սենատ): Հավատացյալները սննդի մահմեդական և ուղղափառ քրիստոնյա են: Բաժանված է 14 վարչ. մարզերի և հանրապետ. նշանակության 2 քաղաքի: Անդամակցում է ՄԱԿ–ին, ԵՏՄ–ին, ԵԱՀԿ–ին, ՀԱՊԿ–ին ևն: Անցումային տնտ–յամբ երկիր է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 11,4 հզ. ԱՄՆ դոլար (2009) է: Արտահանում է նավթ և նավթամթերք, մետաղներ, քիմիկատներ, հացահատիկ, միս ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, դեղեր, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ թենգե:

Մ. թ. ա. III–I դդ–ում Ղ–ի ժամանակակից տարածքում եղել է Կանգյույ պետ. կազմավորումը: VI–VIII դդ–ում՝ Թյուրք. խաքանության և կաղլուկների, IX–XII դդ–ում օղուզների, կարախանյանների պետության կազմում էր: XI դ–ի վերջ – XII դ–ի սկզբին ենթարկվել է սելջուկների, կիդանների, մոնղոլ–թաթարների արշավանքներին: XV դ–ի վերջին կազմավորվել է Ղազախ. խանությունը, որը բաժանվում էր ժուզերի: XVIII դ–ում՝ Փոքր, Միջին, 1860–ական թթ–ին Մեծ ժուզն ընդունել են ռուս. հպատակություն: 1917–ի վերջին և 1920–ի սկզբին երկրում հաստատվել է խորհրդ. իշխանություն: 1920–ին կազմավորվել է Ղրղզ. (1925–ից՝ Ղազախ.) ԻԽՍՀ՝ ՌԽՖՍՀ–ի կազմում, 1936–ից՝ Ղազախ. ԽՍՀ: Անկախության հռչակագիրն ընդունվել է 1990–ին, անկախ է հռչակվել 1991–ին՝ ԽՍՀՄ–ի փլուզումից հետո: Երկրի նախագահը 1990–ից Ն. Նազարբաևն է, որը հաղթել է 1991–ի, 1999–ի, 2005–ի, 2011–ի և 2015–ի (արտահերթ) նախագահ. ընտրություններում:

Ղ–ի հայկ. համայնքը ձևավորվել և ստվարացել է XIX դ–ի 2–րդ կեսին, երբ Ռուսաստանն իր գերիշխանությունն է հաստատել Կենտր. Ասիայում: Ներկայում Ղ–ում բնակվում է շուրջ 26 հզ. հայ, հիմնականում՝ Ալմաթիում, Աստանայում, Կարագանդայում և Կուստանայում: Գործում են հայկ. մշակութ. կենտրոններ, կիրակնօրյա դպրոցներ, ազգագր. երգիպարի ստուդիաներ ևն: 2006–ին Ալմաթիում օծվել է Սբ Կարապետ եկեղեցին:

ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ Ալ–Ֆարաբիի անվան, հիմնադրվել

է 1934–ին Ալմա Աթայում (մինչև 1993–ը՝ Ղազախ. պետ. համալսարան): 2015–ին ուներ ավելի քան 20 հզ. ուսանող (2016):

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան (1971), Ղազախստանի նախագահի մրց. (2009):

ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ, հիմնադրվել է 1946–ին Ալմա Աթայում՝ 1938–ին հիմնադրված ՂազՖԱՆ–ի հիմքի վրա: Վերակազմավորվել է 1991–ին: Բաղկացած է 6 բաժանմունքից, այդ թվում՝ 1 տարածաշրջ., ներառում է 267 ԳՀԻ:

ՂԱԶԱԽՖԻԼՄ Շոքեն Այմանովի անվան, գեղ. և վավերագր. ֆիլմերի ստուդիա Ալմաթիում, հիմնադրվել է 1944–ին: Լավագույն ֆիլմերից են՝ «Ջամբուլ» (1955), «Պատմություն մոր մասին» (1963), «Կիզ–Ժիբեկ» (1970), «Անդրսիբիրյան ճեպընթացը» (1978), «Մի կտոր հաց» (1979, Մոսֆիլմի հետ), «Տունը կանաչ բլրի վրա» (1986), «Պատշգամբ» (1988), «Մանջուրական տարբերակ» (1989), «Վերջին կանգառը» (1990), «Վերածնված կղզին» (2004), «Սիրո հեգնանքը» (2010) ևն:

ՂԱԶԱՆԻ ԼԻՃ, **Գազանա**, ՀՀ Սյունիքի մարզում՝ Զանգեզուրի լ–շղթայի կատար. մասում՝ Գեղի գետի ակունքում՝ մոտ 3150 *մ* բարձր–յան վրա: Երկ.՝ 180 *մ*, լայն.՝ 84 *մ*, մակերեսը՝ 0,018 *կմ*^{2}, առլճն խոր.՝ 10 *մ*:

ՂԱԶԱՆՉՅԱՆ Երվանդ Խաչատուրի (ծ. 1937), ռեժ.: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1974), ՀՀ ժող. արտիստ (2004): Պրոֆ. (1982): Գալյա *Նովենցի* ամուսինը, Հակոբ *Ղազանչյանի* հայրը: 1968–70–ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի ռեժ. (1984–86–ին՝ տնօրեն և ռեժ.), 1970–77–ին՝ Լենինականի դրամատիկ. թատրոնի գլխ. ռեժ., 1980–84–ին և 1986–93–ին՝ ԵՊՀԹ գլխ. ռեժ., 1978–80–ին՝ ԵԵԿՄ գլխ. ռեժ., 1993–ից՝ տնօրեն և գեղ. ղեկ. («Ապուշը» ըստ Ֆ. Մ. Դոստոևսկու, 1968, Կ. Գոցցիի «Թագավոր եղջերուն», 1988, Ժ. Անանյանի «Ես եմ, եկել եմ», 1996, Արիստոֆանեսի «Լիսիստրատես», 1997, ևն):

ՀԽՍՀ Պետ. (1985), ՀՀ նախագահի (2014) մրց–ներ, ՀԱԵ «Սր Սահակ–Սր Մեսրոպ» շքանշան (2008), ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1–ին աստիճանի մեդալ (2012):

ՂԱԶԱՆՉՅԱՆ Հակոբ Երվանդի (ծ. 1959), ռեժ.: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2006): Երվանդ *Ղազանչյանի* և Գալյա *Նովենցի* որդին: 1984–96–ին՝ Կապանի, Գյումրիի պետ. թատրոնների, 1997–ից՝ ԵՊՀԹ գլխ. ռեժ.: 2003–ից՝ Երևանի միջազգ. թատեր. «Արմմոնո» շեքսպիր. փառատոնի հիմնադիր–տնօրենը, 2004–ից՝ ՅՈՒՆԵՍԿՕ–ի թատրոնի միջազգ. ինստ–ի հայաստան. ազգ. կենտրոնի ղեկ. (նաև հիմնադիր–ներից): Բեմադրել է Վ. Շեքսպիրի «Սիրո ապարդյուն ճիգերը» (1991), Սոֆոկլեսի «Անտիգոնե» (1998), Արիստոֆանեսի «Ամպեր», Ռ. Կալինսկու «Հրեշը լուսնի վրա» (2005) ևն:

«Բոսֆորյան խաղեր» փառատոնի գլխ. (2000, 2001, Կերչ), «Ստորի» փառատոնի (2003, Մակեդոնիա), ՀԹԳՄ «Արտավազդ» (2012, 2013) մրց–ներ:

ՂԱԶԱՆՉՅԱՆ Պողոս Կարապետի (1906–1993), ճարտարագետ–մեխանիկոս: Տեխ. գիտ. դ–ր (1952), պրոֆ. (1953): Գնդ. (1955): ՌԽՖՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1958): Աշխ–ները վերաբերում են գազ. տուրբինների, թիավոր մեքենաների, ռեակտիվ շարժիչների տեսության հարցերին: Ստացել է կենտրոնախույս ճնշակի հաշվարկի բանաձև:

ՂԱԶԱՆՉՅԱՆ Վանիկ Հովհաննեսի (1924–1989), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1984), պրոֆ. (1987): Աշխ–ները վերաբերում են խորհրդ. շրջանի հայ մշակույթի զարգացման պատմությանը:

ՂԱԶԱՆՉՅԱՆ Տիրան Տիգրանի (1901–1967), քիմիկոս: Քիմ. գիտ. դ–ր (1952), պրոֆ. (1953): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1963): ՀԽՍՀ–ում կազմակերպել է առաջին ֆիզքիմ. վերլուծության լաբորատորիան: Աշխ–ները վերաբերում են հայ իրականության մեջ քիմ. գիտ–յան զարգացման պատմությանը:

ՂԱԶԱՎԱԹ (արաբ. – ռազմերթ, ռազմարշավ), մինչմահմեդ. ժամանակաշրջանում՝ գերակայության և ավարի համար արաբ. ցեղերի ռազմ. գործողությունները միմյանց և հարևան երկրամասերի դեմ, մահմեդականության առաջացումից հետո՝ հավատի տարածման համար մղվող «սրբազան պատերազմ» (ջիհադ):

ՂԱԶԱՐ Ա. ՋԱՀԿԵՑԻ, *Ճահկեցի* (ծ. թ. անհտ–1751), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1737–ից: Պարսից իշխանություններից հալածվել և աքսորվել է Սևանա կղզի: 1747–ին ազատվել և վերահաստատվել է կաթողիկոս. գահին: Կառուցել է Սբ Էջմիածնի վանքի վեհարանը և «Ղազարապատ» հյուրանոցը: Հեղինակ է «Դրախտ ցանկալի» (1735) դավանաբան. երկի, Աղոթագրքի («Աստուածաղերս», 1786), տաղերի ժող–ի («Երգարան», 1737):

ՂԱԶԱՐ ԹՈՒԽԱԹԵՑԻ, *Թոխաթցի* (մոտ 1550–ական թթ–1610), տաղասաց, գրիչ: Հեղինակ է ներբողների, ողբերի («Գովասանք Կարապետ արքեպիսկոպոսի ի Թոխաթցի Ղազար եպիսկոպոսէ ասացեալ», «Գովասանք ի վերայ Թոխաթ քաղաքին», «Ողբ ի վերայ կոտորածին Թոխաթի», «Ողբ ի վերայ սովոյն Թոխաթի»): Ընդօրինակել է նաև ձեռագրեր, նկարազարդել Ավետարան (1606):

ՂԱԶԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ, XVII դ–ի 2–րդ կեսի տաղասաց: Հայտնի է Ղ. Ս–ու «Ծով աչք, ամ քանի նայիս խոլորով» («Տաղ սիրոյ եւ ուրախութեան») սիրերգը, որը հայ միջնադար. քնարերգության ընտիր էջերից է: Հայտնաբերվել է Ղ. Ս–ուն վերագրվող մեկ այլ տաղ՝ «Նորին Ղազարու վասն սիրոյ ասացեալ»:

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ (440/443–VI դ–ի սկիզբ), պատմիչ: 486–ին *Վահան Մամիկոնյանը* նրան նշանակել է Վաղարշապատի վանքի առաջնորդ: Հալածվելով հետադեմ հոգևորականությունից՝ հանիրավի ամբաստանվել է և 490–ին հեռացել Ամիդ: Այստեղ գրել է «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» ինքնապաշտպ. ուղերձը: Հայոց մարզպանը հետ է կանչել նրան և պատվիրել գրել Հայոց պատմությունը (ընդգրկում է 387–487–ի դեպքերը, տպագր.՝ 1793, Վնտ.): «Պատմությունը» և «Թուղթը» միասին («Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան») հրատարակվել է 1904–ին Թիֆլիսում: Ըստ ավանդության՝ Ղ. Փ. թաղված է ՀՀ Արագածոտնի մարզի Լազրևան գ–ում (այժմ՝ Ղազարավան), մեկ այլ տարբերակով՝ Սյուն Սբ Առաքելոց վանքում:

ՂԱԶԱՐՅԱՆ Ալբերտ Սարգսի (ծ. 1941), հիգիենիստ–թունաբան: Բժշկ. գիտ. դ–ր (2001), պրոֆ. (2005): Աշխ–ները վերաբերում են աշխ–ի հիգիենայի և թունաբանության խնդիրներին: Սահմանել է քլորոպրենային կաուչուկների արտադրյան 10–ից ավելի քիմ. նյութերի ՄԹՉ–ներ:

ՂԱԶԱՐՅԱՆ Անդրանիկ Աբրահամի (1904–1992), գեն–մայոր: ԽՄ հերոս (1943): ՀՄՊ–ի ժամանակ՝ հրաձգ. դիվիզիայի հրամ. (1942–ի դեկտ–ից): Աչքի է ընկել Կուրսկի աղեղում մղված մարտերում, Դեսնայի և Դնեպրի գետանցումների ժամանակ (որի համար արժանացել է հերոսի կոչման): Պատերազմից հետո՝ ռազմ. միավորման հրամ–ի տեղակալ: 1955–ից՝ պահեստի գեն.:

ՂԱԶԱՐՅԱՆ Անդրանիկ Բորիսի (1954–2001), թերապևտ: Բժշկ. գիտ. դ–ր (1990), պրոֆ. (1990): Աշխ–ները վերաբերում են սրտամկանի ինֆարկտի ժամանակ թոքային բարդությունների հետազոտմանը, սրտի իշեմիկ և հիպերտոնիկ հիվանդությունների դեղաբանադինամիկային և β–ադրենամեկուսիչներով բուժման հարցերին: ՀՀ թերապևտների ընկ–յան փոխնախագահ (1968–2000):

ՂԱԶԱՐՅԱՆ Աշիկ (Արշավիր) Մեսրոպի (1904–1962), հրտ., խմբ., թարգմանիչ: 1935–36–ին՝ *«Կոմունիստ»* (ռուս.) օրաթերթի խմբ., եղել է Հայկ. հեռագր. գործակալության (այժմ՝ *Արմենպրես*), *Հայպետհրատի* տնօրեն: Թարգմ–յուններ է արել ռուս–ից:

ՂԱԶԱՐՅԱՆ Աշխարհբեկ Սարգսի (1918–1986), սերժանտ: ԽՄ հերոս (1945): Հերոսի կոչման արժանացել է Վարշավայի վոյեվոդության Չեռնովա գ–ի շրջանում թշնամու ամրությունները ճեղքելու ժամանակ ցուցաբերած արիության համար:

ՂԱԶԱՐՅԱՆ Աշոտ Արամի (1926–2008), ճարտ.: Նրա նախագծերով Երևանում կառուցվել են Կոմպոզիտորների տունը (համահեղ., 1957), բնակելի տներ (1954–60), ՀԽՍՀ ԳԱԱ և ԵՊՀ հաշվող. կենտրոնը (1967), Կուրորտաբանության և ֆիզիոթերապիայի ԳՀԻ համալիրը (1967), Վիրաբուժության գիտ. կենտրոնի Երևանի մասնաճյուղի (1980), ՀԱՊ–ի (համահեղ., 1978) շենքերը:

ՂԱԶԱՐՅԱՆ Աշոտ Բեգլարի (ծ. 1961), կոմպոզիտոր: Հեղինակ է սիմֆ. ֆանտազիայի (1986), 3 դիվերտիսմենտի՝ սիմֆ. նվագախմբի համար (1987), կամեր., խմբերգ. (հոգևոր երգեր՝ երգչախմբի և նվագախմբի, 1986–2014, «Ալելուիա», 1997), վոկալ և այլ երկերի: ԹՄՄ մրց. (1998):

ՂԱԶԱՐՅԱՆ Աշոտ Սուրենի (ծ. 1949), դերասան, երգիչ: ՀՀ ժող. արտիստ (2014): 1978–89–ին՝ Հայֆիլհարմոնիայի «Նաիրի» վոկալ–գործիք. անսամբլի գեղ. ղեկ. և մենակատար, «Խոսքի, ծիծաղի և հումորի» դպրոցի (2006) հիմնադիր–ղեկ.: Խաղացել է հեռուստաներկայացումներում, նկարահանվել կինոյում («Քույրիկը Լոս Անջելեսից», «Մեր բակը», եռաֆիլմ, ևն):

Սայաթ–Նովայի անվ. մրցույթի 1–ին մրց. (2001), «Տասնամյակի լավագույն հումորիստ» (2006, 2007), ՀՀ «Մովսես Խորենացի» (2001), Ֆրիտյոֆ Նանսեն հիմնադրամի ոսկե (1999) մեդալներ:

Երևանի պատվ. քաղաքացի (2006):

ՂԱԶԱՐՅԱՆ Աշոտ Վաղարշակի (1921–1995), գեն–մայոր (23.04.1970): ԽՄ հերոս (1945): Հերոսի կոչման արժանացել է 1945–ի սկզբին Արլ. Պրուսիայում մղված ռազմ. գործողություններում ցուցաբերած խիզախության համար: 1969–86–ին՝ ՀԽՍՀ զինվ. կոմիսար: 1987–95–ին՝ ՀՀ աշխ–ի և ԶՈՒԽ–ի վետերանների խորհրդի նախագահ: Հեղինակ է «Պատերազմ,

մարդիկ, ճակատագրեր» (հ. 1–3, 1979–85) հուշագրության: ՀԽՍՀ Պետ. մրց. (1985):

ՂԱԶԱՐՅԱՆ Արմեն Յուրիի (ծ. 1963), ճարտ–յան պատմաբան: ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2015): Հեղինակ է Հայաստանի Հոիփսիմե–Զվարի տիպի հուշարձաննե–րին (V–VII դդ), Մաստարայի եկեղեցուն և Այսրկովկասի ու Բյուզանդիայի շինարվ–ի հետ նրա առնչություններին, Կապա–դովկիայի, Կիլիկիայի և Իսավրիայի վաղքրիստ. շինարվ–ին ու մշակույթին վերաբերող աշխ–ների: Մասնակցել է ռուս. «Ուղղափառ հանրագիտարանի» ստեղծման աշխ–ներին:

ՂԱԶԱՐՅԱՆ Արմենուհի Գևորգի (ծ. 1970), ֆիզիկոս–տեսաբան: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (2016): Աշխ–ները վերաբերում են ուժեղ լազեր. դաշտերում ատոմ. և նանոհամա–կարգերում, պլազմայում հարկադրական արգելակ. ցրման, բարձր հարմոնիկների գեներացման բազմաֆոտոն շարժընթաց–ների տեսական հարցերին:

ՂԱԶԱՐՅԱՆ (Տեր–Ղազարյան) Արշավիր Մելիքսեթի (1914–1995), դերասան, դրա–մատուրգ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1955): 1935–95–ին՝ ԵՊՀԹ դերասան (Համբո՝ «Գիքոր»՝ ըստ Թումանյանի, Սուրաթով՝ Գ. Սունդուկյանի «Էլի մեկ զոհ», Մինտա–նելի՝ «Բոռը»՝ ըստ Է. Լ. Վոյնիչի): Խաղա–ցել է նաև հեռուստաներկայացումներում («1946 թվական»՝ ըստ Հ. Մելքոնյանի, Ն. Զարուդնիի «Ծիածան», ևն): Հեղինակ է պիեսների («Լուսաբաց», «Ցասման Միեր», «Երեք գիշեր» ևն):

ՂԱԶԱՐՅԱՆ Արշավիր Պետրոսի (1896–1981), համաճարակաբան: Բժշկ. գիտ. թեկնածու (1945): ՀԽՍՀ վաստ. բժիշկ (1950): Դերենիկ *Մկրտչյանի* եղբայրը: Աշխ–ները վերաբերում են ուղեղա–պատյանաբորբի, աղիք. սուր վարակիչ հիվանդությունների, դիֆթերիայի, սալ–մոնելոզի, վիրուս. լյարդաբորբի կլինի–կային, համաճարակաբանությանն ու կանխարգելմանը:

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (1951), Լե–նինի (1954) շքանշաններ:

ՂԱԶԱՐՅԱՆ Արտաշես Արամի, **Արտաշես Արամ** (ծ. 1955), բանաստեղծ, հրապարա–կախոս, խմբ.: 2003–05–ին՝ *«Նոր–Դար»* (Երևան) ամսագրի գլխ. խմբ.: Հեղինակ է «Դեղձանիկներ» (1979), «Կապույտ տեսիլ–ներ» (1984), «Սփոփանքի ծաղիկ» (1990), «Գիշերվա ժամ» (1998), «Նարնջագույն արշիպելագ» (2003), «Նաիրյան քրոնիկոն» (2004), «Noesis. Էսսեներ» (2006), «Ձրերի վրա» (2008), «Ձութակահար թզուկը» (1989, մանկ.) բանաստեղծությունների ժող–ների, «Սգասյուն տաճար. Սումգայիթ 1988» (1992) պոեմի:

ՀԳՄ Ա. Իսահակյանի (1992), Պ. Սևակի (1998) անվ., «Հրանտ և Սանուշակ Սիմոն–յաններ» հիմնադրամի (2006) մրց–ներ:

ՂԱԶԱՐՅԱՆ Բաբկեն Կիրակոսի (ծ. 1933), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ–ր (1989): Հեղինակ է «Վերաբերականները հայերեն տեքստում» (1987), «Խոսքի մասերի տեքս–տային գործառությունները» (1998) և այլ աշխ–ների, «Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան»–ի (1982):

ՂԱԶԱՐՅԱՆ Գագիկ Հովհաննեսի (ծ. 1947), քանդ.: Վիգեն *Ղազարյանի* եղբայ–րը: Պրոֆ. (1998): Հեղինակ է դեկորա–տիվ–մոնումենտալ գործերի («Հիշողութ–յուններ Կոնդից», 1982, ՀՆՄ մրց.՝ 1983, Տարվա լավագույն աշխատանք, «Պատ–մական Էրեբունի», 1987–88, «Արքայա–դուստրը հավալուսնով», 1994, «Արցախի վերածնունդը», 1996, «93–ի ցուրտ ձմեռը», 1997, «Սրբազանը», 2002, «Հաղթանակ», 2007, ՀՆՄ մրց.՝ 2008, Տարվա լավագույն աշխատանք, «Աղջիկը և դելֆինը», 2011, «Ծերացած հրեշտակը», 2016, փայտ, Ս. Պետերբուրգ, ևն):

ՂԱԶԱՐՅԱՆ Գագիկ Սամսոնի (ծ. 1968), ըմբիշ (սամբո): ԽՍՀՄ ս. վ. վ. (1990): Միջազգ. կարգի ս. վ. (1988): ԽՍՀՄ (1988–90), աշխարհի (1988–91, 1996) չեմ–պիոն: Աշխարհի (1989, 1994) և ԽՍՀՄ (1991) գավաթակիր:

ՂԱԶԱՐՅԱՆ Գառնիկ Սիմոնի (1888–1960), քաղ., պետ. գործիչ, խմբ.: 1921–ին՝ «Կարմիր ռանչպար» (Գորիս), 1925–29–ին՝ *«Մաճկալ»* թերթերի խմբ.: 1922–24–ին՝ Զանգեզուրի գավկոմի քարտուղար, 1929–35–ին՝ ՀԽՍՀ Գլավլիտի պետ, ապա՝ Ռադիոկոմիտեի նախագահ, Հայկ. հեռագր. գործակալութ–յան (այժմ՝ *Արմենպրես*) տնօրեն: Հեղինակ է «Ազատության շեփորը» (հրտ.՝ 1963) բա–նաստեղծությունների ժող–ի:

ՂԱԶԱՐՅԱՆ Գրիգոր Ալեքսանի (ծ. 1931), ներզատաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1970), պրոֆ. (1970): ՀՀ (2000), ՎՀ (2000) ԲԳԱ–ների ակադ.: Կլինիկայում ներդրել է թունավոր խպիպի ծանր ձևերի և վա–հանագեղձի քաղցկեղի՝ ռադիոակտիվ յոդով բուժման, վահանագեղձի թիրեոիդ հորմոնի և հիդրոլիզատների քրոմա–տագր. վերլուծության եղանակները: Ան–դրեյ *Միքայելյանի* հետ՝ներդրել է շաքար. հիվանդության բուժումը՝ ենթաստամոքս. գեղձի կղզյակային կուլտուրայով:

ՂԱԶԱՐՅԱՆ Դանիել Ավագի (1883–1958), կոմպոզիտոր, խմբավար, երգիչ, հայկ. ռոմանսի հիմնադիրներից: ՀԽՍՀ վաստ. ուսուցիչ (1944), արվ. վաստ. գործիչ (1945): Այսրկովկասի հայկ. շրջաններում դասա–վանդել է և տարածել խմբերգ. արվ–ը, հիմնադրել է երաժշտ. ստուդիաներ (1922, Բաթում, 1924, Լենինական): Հեղինակ է 200–ից ավելի երգ–ռոմանսների («Ուռին», «Սար դարդեր», «Քույր իմ՝նազելի», «Լան–ջեր մարջան» ևն), քայլերգերի, մանկ. երաժշտ. պատկերների, «Սոս և Վարդի–թեր» (ըստ Պերճ Պռոշյանի) երաժշտ. դրամայի: Լենինի շքանշան (1949):

ՂԱԶԱՐՅԱՆ Դավիթ Գարսևանի (ծ. 1939), խմբավար, հաս. գործիչ: ՀՀ մշա–կույթի վաստ. աշխատող (1985): ԵՊԿ պրոֆ. (2002): Կազմել և խմբագրել է հայ խմբերգ. երաժշտությանը վերաբերող ժող–ներ («Հայ երգահանների խմբեր–գերի ընտրանի», 1999, «Հոգևոր երգեր և խմբերգեր», 2004):

ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառա–յությունների համար» 2–րդ աստիճանի մեդալ (2016):

ՂԱԶԱՐՅԱՆ Ենոք Սեմյոնի (1907–1981), բուսաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1966), պրոֆ. (1961): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1967): 1947–52 և 1961–62–ին՝ ՀԽՍՀ գյուղնախա–բար: Աշխ–ները վերաբերում են բուսաբ–յան, երկրաբուսաբ–յան, մարգագետնա–բուծության և այլ հարցերի:

ՂԱԶԱՐՅԱՆ (Տեր–Ղազարյան) Էդուարդ Ավագի (1923–2012), միկրոքանդակների ու փորագրությունների վարպետ, երա–ժիշտ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2004): Թզի կորիզի, մարդու մազի, բրնձի հատիկի, ալմաստի և այլ նյութերի՝ միկրոնով չափ–վող մեծության մասնիկների վրա ստեղծել է 600–ից ավելի («Զարլի Չապլին», 1973, պողպատ, «Նիկոլո Պագանինի», 1974, ոսկու փոշեհատիկ, 2–ն էլ՝ ասեղի անցքի մեջ), նաև այդ բնագավառում եզակի՝ շարժվող միկրոֆիգուրներով («Գուլիվե–րը և լիլիպուտները», 1976, մարդու մազ, պողպատ) միկրոքանդակներ:

«Կենդանի լեգենդ» (2006, Մեծ Բրիտա–նիա), ՀԱԵ «Սր Սահակ–Սր Մեսրոպ» (2010) շքանշաններ, ՀՀ Մ՚Ն ոսկե մեդալ (2010):

ՂԱԶԱՐՅԱՆ Էդուարդ Մուշեղի (ծ. 1942), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1982), պրոֆ. (1983): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996): 1988–90–ին՝ ՀՀ ժողկրթության նախարարի 1–ին տե–ղակալ: 1999–2001–ին՝ ՀՀ ԿԳ նախարար, 2002–06–ին՝ ՀՀ ԳԱԱ ֆիզմաթ. և տեխ. գիտ–ների բաժանմունքի ակադ. քար–տուղար: Կարևոր արդյունքներ է ստացել տարածականորեն սահմանափակ համա–կարգերում տարբեր քվազիմասնիկների համակարգերի (էքսիտոն, երկէքսիտոն ևն) էներգ. սպեկտրների ուսումնասիրման բնագավառում: Զարգացրել է ֆոնոն. են–թահամակարգի և խառնուկ. վիճակների հետ ռեզոնանս. լազեր. ճառագայթման փոխազդեցության տեսությունը:

ՀՀ Պետ. (2011) մրց., ՀՀ «Ականիա Շի–րակացի» մեդալ (2011), ՀՀ վարչապետի հուշամեդալ (2012):

ՂԱԶԱՐՅԱՆ Էդուարդ Սերգեյի (ծ. 1956), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1998), պրոֆ. (2004): ՀԳԳԱ թղթ. անդամ (1997): Սերգեյ *Ղազարյանի* որդին: Աշխ–ները վե–րաբերում են ագրար. տնտեսագիտ–յան խնդիրներին և շուկայական տնտ–յան պայմաններում գղտ–յան զարգացման հարցերին:

ՂԱԶԱՐՅԱՆ Լևոն Զարմայրի (1908–1983), քիմիկոս–օրգանիկ: Քիմ. գիտ. դ–ր (1953), պրոֆ. (1953): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1965): Աշխ–ները վերաբերում են տեղ. հումքից քրոմպիկի (որի հիման վրա կառուցվել է Երևանի քրոմպիկի գործա–րանը), ացետիլենային ալկոհոլների ու դիոլների, ցավազրկող նյութերի, պոլիվի–նիլ ացետալների ստացման եղանակների մշակմանը:

ՂԱԶԱՐՅԱՆ Կառլեն Բագրատի (ծ. 1947), մեխանիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1995): Աշխ–ները վերաբերում են թաղանթների և սալերի կայունության խնդիրներին, հոսանքատար ձողերի, սալերի և գլան. թաղաթների մագնիսաառաձգ. կայու–նության:

ՂԱԶԱՐՅԱՆ Կառլեն Սարգսի (1929–2014), ճարտարագետ–շինարար: ՀՀ վաստ. ճարտարագետ (1972): Ղ–ի նախագծե–րով Երևանում կառուցվել են ԵՊՀ–ի գլխ. մասնաշենքը (1957), «Դինամո» մարզասրահը (1965), Մոսկվայում՝ Հա–մամիութ. ԺՏՆՑ–ի հայկ. տաղավարը (վերակառուցում, 1954), առողջարաններ՝ Արզնիում (1968), Ջերմուկում (1968, 1970) և Հանքավանում (1972), Մեծամոր ավա–նը (1969–80), Կապանում՝ «Դավիթ–Բեկ» բնակելի թաղամասը (1985), ևն: Համա–միութ. ԺՏՆՑ բրոնզե մեդալ (1984):

ՂԱԶԱՐՅԱՆ Կառլոս Բագրատի (ծ. 1940), ռազմ. և պետ. գործիչ, գեն–մայոր (1990): 1977–83 և 1999–2000–ին՝ ՀՀ ՆԳ փոխ–նախարար, 1990–91–ին՝ ՆԳ նախարար: 1997–99–ին՝ ՀՀ նախագահի գլխ. գինվ. տեսուչի տեղակալ: 2009–ից՝ ՀՀ Հանր. խորհրդի հանձնաժողովի նախագահ:

ՂԱԶԱՐՅԱՆ Հակոբ Ստեփանի (1928–2013), անասնաբույժ: Անասնաբուժ. գիտ. դ–ր (1989), պրոֆ. (1998): Աշխ–ները վերաբե–րում են խեկ–ների սիբիրախտ, բրուցելոզ,

լեպտոսպիրոզ և պաստերելոզ հիվանդությունների դեմ անջատ, համալիր և զուգորդված եղանակներով պատվաստման խնդիրներին: Ստեղծել է «Լակտոբակտերին-6» կաթնաթթվային պատրաստուկը:

ՂԱԶԱՐՅԱՆ Հայկ Գեղամի (ծ. 1940), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1981), պրոֆ. (1985): 1992–94-ին՝ ՀՀ լուսավորության նախարար: Աշխ-ները վերաբերում են դիֆերենցիալ օպերատորների ուժի ու հզորության համեմատությունների և ընդհ. գծային օպերատորների հիպոէլիպտիկության կրողի և կշռի որոշմանը: ՀՀ ԿԳՆ ոսկե մեդալ:

ՂԱԶԱՐՅԱՆ Հայկ Միրզաջանի (1930–2014), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1968), պրոֆ. (1971): Աշխ-ները վերաբերում են Արմ. Հայաստանի XIX դ-ի սոցիալ-տնտ. կյանքի, հայ հաս-քաղ. մտքի, ազգ-ազատագր. շարժման և Հայոց ցեղասպանության պատմության հարցերին: Հեղինակ է «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում 1890–1922 թթ.» (հ. 1–2, 2007) աշխ-յան:

ՂԱԶԱՐՅԱՆ Հասմիկ Արմենի (ծ. 1946), նկարչուհի-գոբելենագործ: «Զանգեզուր» (1976), «Ժամանակակից Հայաստան» (շարք, 1981-ից), «Հայաստանի քարեր» (1987), «Ճանապարհորդություն» (1991) շարքերը, «Ուռենիներ» (1997), «Վարդեր» (2001), «Տարվա եղանակներ» (վերդույրների շարք՝ 2006-ից), «Սասունցի Դավիթ» (2013, գոբելեն), «Նոկտյուրն» (2015, եռամաս) աշխ-ներով հաստատել է ժամանակակից գոբելենի ազգ. ձևը: Համահեղինակ է «Երգ Հայաստանի» (1984) գոբելենի (Գյումրու դրամ. թատրոն), «Շախմատ» շարքի (1986, Երևանի շախմատի տուն):

ՂԱԶԱՐՅԱՆ Հմայակ Լևոնի (1907–1944), կապիտան: ԽՄ հերոս (1944, հետմահու): ՀՄՊ-ի ժամանակ ղեկավարել է Դնեպրի գետանցումը (1943-ի սեպտ. 27–28), ցուցաբերել անձն. քաջություն, որի համար արժանացել է հերոսի կոչման:

ՂԱԶԱՐՅԱՆ Հրանտ Հովհաննեսի, **Հոբիզոն Հրանտ** (ծ. 1927), երգիծաբան-ասմունքող, բանաստեղծ: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2009): Հեղինակ է «Արևոտ ճամփա» (1958) բանաստեղծությունների, «Ամբողջական» (2007) պատմվածքների, մանրապատումների ժող-ների:

ՂԱԶԱՐՅԱՆ Հրանտ Հովհաննեսի (1930–2014), հրտ-խմբ., թարգմանիչ: ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1971): 1976–91-ին՝ *«Հայաստան»* հրտչ-յան տնօրեն: Թարգմ-յուններ է արել ռուս-ից:

ՂԱԶԱՐՅԱՆ Հունան Ղազարի (ծ. 1948), գյուղատնտես: Գղտ. գիտ. դ-ր (2003): Աշխ-ները վերաբերում են հողագիտ-յան, ագրոքիմիայի, հողբարելավման հարցերին: Հողագետների հայկ. ընկ-յան նախագահ (2000-ից):

ՂԱԶԱՐՅԱՆ Ղազարոս Սողոմոնի (ծ. 1954), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1969): Ապացուցել է, որ ինտեգրալի ֆունկցիաների դասում սահմանափակ նորմավորված համակարգերը բազիս լինել չեն կարող, տվել է Ալեքսիչի հիմնախնդրի բացաս. պատասխանը: 2000-ից՝ Իսպանիայում:

ՂԱԶԱՐՅԱՆ Մանյա Միքայելի (1924–1998), արվեստաբան: Արվեստագիտ. դ-ր (1996): ՀՀ արվ. վաստ. գործիչ (1983): Հեղինակ է «Նոր Ջուղայի գեղանկարչությունը XVII–XVIII դարերում» (1985, պարսկ.), «Հայկական գորգ» (հայ., անգլ., 1988), «Փայտի գեղարվեստական փորագրությունը Հայաստանում» (1989), «Արցախի արուեստի գանձերը» (1993) աշխ-ների: Կազմել է մի շարք թանգարանների կատալոգներ:

ՂԱԶԱՐՅԱՆ Մարիամ Սովսեսի (ծ. 1955), դերասանուհի: ՀՀ վաստ. արտիստ (2008): 1975-ից՝ ԵԵԿՄԹ-ի դերասանուհի (Ադելաիդա՝ Ժ. Անանյանի «Տաքսի, տաքսի», Մարթա՝ Հ. Պարոնյանի «Ատամնաբույժն արևելյան», Խանում՝ Ա. Յագարելիի «Խանումի արարքները», Էլիզ Դուլիթլ՝ Բ. Շոուի «Իմ չքնաղ լեդի», ևն):

ՀԹԳՄ «Արտավազդ» (2000), 8-րդ միջազգ. թատեր. փառատոնի Մեծ (2002, Իրաք), Մ. Սիմոնյանի անվ. (2006) մրց-ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2003), ՄՆ (2015), ՀԹԳՄ (2015) ոսկե մեդալներ, ՀՀ վարչապետի հուշամեդալ (2015):

ՂԱԶԱՐՅԱՆ Մեխակ Հայկազի (ծ. 1966), բռնցքամարտիկ: ԽՍՀՄ (1983), միջազգ. կարգի (1986) ս. վ., ԽՍՀՄ ս. վ. վ. (1991): ԽՍՀՄ ժողդ-ների սպարտակիադայի (1986), Բարի կամքի միջազգ. խաղերի (1986), ԽՍՀՄ (1987, 1988, 1990), Եվրոպայի (1987) չեմպիոն, բրոնզե մեդալակիր (1993): 1997-ից՝ Գյումրիի բռնցքամարտի մարզադպրոցի տնօրեն:

ՂԱԶԱՐՅԱՆ Միլիտոս Գևորգի (1907–1997), դերասան: ՀՀ ժող. արտիստ (1985): 1945–86-ին՝ Մեղրու, Կապանի, 1986-ից՝ Գորիսի պետ. թատրոնների դերասան: Խաղացել է բնութագր-դրամատիկ. դերեր՝ Սեյրան, Բարխուդար (Շիրվանզադեի «Նամուս»), Պաղտասար (Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար»), Քեբոտ (Օ. Նիլի «Սերը ծփիների տակ») ևն:

ՂԱԶԱՐՅԱՆ Միշա Արիստակեսի (ծ. 1932), աստղաֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1987), պրոֆ. (1988): Հայտնաբերել է մոլորակաձև միգամածություններ, ԱՄ ավելցուկով գալակտիկաներ («Ղազարյանի գալակտիկաներ»), փոփոխ. և H11 աստղեր, ուսումնասիրել դրանց ֆիզ. առանձնահատկությունները:

ՂԱԶԱՐՅԱՆ Միքայել Հայրազատի (ծ. 1948), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1989), պրոֆ. (2003): Մասնակցել է մետաղի գոլորշիներով աշխատող իմպուլս. լազերների և դրանց հիման վրա գործող պայծառության ուժեղացուցիչներով օպտիկ. համակարգերի հիմունքների մշակման, ստեղծման ու հետազոտման աշխ-ներին: ՌԴ ճարտարագիտ. ԳԱ անդամ (2003): ԽՍՀՄ Պետ. մրց. (1980):

ՂԱԶԱՐՅԱՆ Ներսես Սարգսի (ծ. 1969), մեխանիկոս: Տեխ. գիտ. դ-ր (1998), պրոֆ. (1999): Սարգիս Մ. *Ղազարյանի* որդին: 2005-ից՝ Նյու Յորքի առևտրաֆինն. կենտրոնի Կանադայի մասնաճյուղի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են մակրոէկոնոմիկայի լավարկման հարցերին:

ՂԱԶԱՐՅԱՆ Նորայր Վաղինակի (1932–2016), փորձարկող օդաչու, գնդ.: ԽՍՀՄ վաստ. օդաչու (1974): Մասնակցել է ՄիԳ-21, ՄիԳ-23, ՄիԳ-25-Մ կործանիչների տարբեր մոդիֆիկացիաների փորձարկումներին: Առաջինն է գերազանցել ճակատ. հարձակման արագության սահմանված չափը (5000 *կմ/ժ*): 1987–95-ին՝ «Մոլնիա» ԳԱՄ-ի (Մոսկվա) ավիացիոն գիտատեխ. ստեղծագործ. կենտրոնի փոխտնօրեն:

ԽՍՀՄ Կարմիր աստղի (1970), Լենինի (1975) շքանշաններ:

ՂԱԶԱՐՅԱՆ Շահում Արամի (1932–2007), դերասան: ՀՀ վաստ. արտիստ (1978): Պրոֆ. (2005): 1955–93-ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ., 1993-ից՝ Համազգ. թատրոնների դերասան (Կելին՝ Յ. Դրուցեի «Սրբություն սրբոց», Աբիսողոմ աղա՝ «Մեծապատիվ մուրացկաններ»՝ ըստ Հ. Պարոնյանի, Դենի՝ Վ. Սարոյանի «Մի գավաթ բարություն», Բառնիե՝ Մանիեի «Օսկար», ևն): Խաղացել է հեռուստաթատրոնում (Մ. Գալշոյանի «Մամփրե արքա», Ա. Քալանթարյանի «Մովսես ապեր» ևն), հանդես է եկել ասմունքով, նկարահանվել կինոյում («Կյանքի լավագույն կեսը», 1979, «Խոշոր շահում», 1980, «Հին օրերի երգը», 1982, երեքն էլ՝ Հայֆիլմ, ևն):

ՀՀ Պետ. մրց. (1981), «Մովսես Խորենացի» մեդալ (1999):

ՂԱԶԱՐՅԱՆ Պետրոս Արամի (ծ. 1946), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դ-ր (1986), պրոֆ. (1990): Աշխ-ները վերաբերում են թոքերի ոչ առանձնահատուկ հիվանդությունների, ենթաստամոքս. գեղձի բորբոքումների, սպիտակարյունության և պարբեր. հիվանդության ախտաբանության հարցերին: Նյու Յորքի ԳԱ (1996), Էկոլոգիայի միջազգ. ակադ-ի (2000) անդամ: ԱՄՆ-ի Կենսագր. ինստ-ի «Տարվա մարդ» (1998):

ՂԱԶԱՐՅԱՆ Ռաֆայել Ավետիսի (1924–2007), ռադիոֆիզիկոս: Տեխ. գիտ. դ-ր (1975), պրոֆ. (1978): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1986-ից): Վազգեն *Ղազարյանի* եղբայրը: «Ղարաբաղ» կոմիտեի անդամ (1988–90): 1989-ին ձերբակալվել է, 6 ամիս պահվել Մոսկվայի Բուտիրյան բանտում: 1990-ի փետրհուլիսին՝ ՀՀ ԳԽ փոխնախագահ, ՀՀ ԳԽ մշտ. հանձնաժողովի նախագահ (1990–95), 1991-ից՝ ՀՀ ԳԱԱ «Մաշտոց» ճարտարագիտ. կենտրոնի հիմնադիր-տնօրեն: Ղ-ի ղեկավարությամբ ստեղծվել և շահագործման է հանձնվել (1969) Երևան-Բյուրական լազեր. բազմակապուղի հեռախոսագիծը, որն առաջիններից էր աշխարհում: Աշխատակիցների հետ ուսումնասիրել է մթն-ում լուս. ալիքների տարածման և լազեր. կապի արդյունավետության բարձրացման հարցերը: ՀՄՊ և ԼՂՀ «Մխիթար Գոշ» շքանշաններ:

ՂԱԶԱՐՅԱՆ Ռեգինա Թադևոսի (1915–1999), նկարչուհի: ՀՀ վաստ. նկարիչ (1985): 1935–37-ին փրկել է Ե. Չարենցի մի շարք ձեռագրեր: Հեղինակ է դիմանկարների («Չարենց», 1966, «Կոմիտաս», 1968, «Աննա Ախմատովա», 1981), թեմատիկ պատկերների («Խեցեգործներ», 1978, «Խաղաղ տիեզերք», 1983), բնանկարների («Աշուն», 1962, «Աղավնաձոր», 1965) ևն: Ղ-ի արվ-ում ուրույն տեղ ունի չարենցյան թեման («Ամբոխները խելագարված», 1965, «Չարենցի վերջին ճանապարհը՝ հավերժություն», 1998, ևն):

ՂԱԶԱՐՅԱՆ Ռուբեն Սերոբի (1940–2011), լեզվաբան, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1993), պրոֆ. (1996): Սերոբ *Ղազարյանի* որդին: Հեղինակ է «Նոր հայկազյան բառարան»-ի (1972), կենդանիների (հայ-ռուս-լատ., պր. 1–6, 1992–2001) և բուսանունների (հայ-լատ-ռուս-անգլ-ֆրանս., 2002) կարգաբան. բառարանների, «Միջին գրական հայերենի բառապաշարը» (2001) և այլ աշխ-ների, «Գրաբարի հոմանիշների բառարան»-ի (2006), համահեղ.՝ «Միջին հայերենի բառարան»-ի (հ. 1, 2, 1987, 1992), «Գրաբարի բառարան»-ի (հ. 1–2, 2000), «Թուրքերեն-հայերեն բառարան»-ի (2003) և այլ բառարանների:

ՂԱԶԱՐՅԱՆ Սամվել Արմենի (ծ. 1949), քանդ., նկարիչ-ձևավորող: Հեղինակ է «Կանոն» (1979), «Ծովինար» (1985, Իջևան), «Փոքր Միեր» (1989), «Դժոխքի դուռը» (1994), «Ավետում» (1998), «Կոմիտաս» (2005, Քվեբեկ, Կանադա), «Գաբրեգին Նժդեհ» (2013–14), «Ջորավարը» (1991–2016) և այլ քանդակների, նաև գրքերի ձևավորումների, գրաֆիկ. թերթերի («Սասունցի Դավիթ», շարք, 1990–2011):

Միջազգ. ցուցահանդեսների արծաթե (1984, Թբիլիսի), ոսկե (1994, 1998, Ռավենննա) մեդալներ և մրց-ներ:

ՂԱԶԱՐՅԱՆ Սարգիս Հայկազի (ծ. 1956), մարզիչ (բռնցքամարտ): ՀՀ (1983), ԽՍՀՄ (1991) վ. մ.: 1987–92-ին՝ ԽՍՀՄ բռնցքամարտի հավաքականի մարզիչ: Մարզել է Մեխակ *Ղազարյանին*:

ՂԱԶԱՐՅԱՆ Սարգիս Մնացականի (ծ. 1936), ճարտարագետ-հիդրոտեխնիկ: Տեխ. գիտ. դ-ր (1987), պրոֆ. (1988): ՀԳԴԱ թղթ. անդամ (1995): Ներսես *Ղազարյանի* հայրը: Բացահայտել է ստորգետնյա ջրերի հոսքի օրինաչափությունները բազմաշերտ ծծանցող միջավայրում փոփոխ. ելքով ջրի ինքնաթափման դեպքում տեղադրված ջրհորներից: ՌԴ բարեփոխման և էկոլոգիայի միջազգ. ակադ-ի անդամ (1994):

ՀՀ ԳԿՆ (2006), ՀՊԱՀ (2006) ոսկե, ՀՀ «Անանիա Շիրակացի» (2010) մեդալներ:

ՂԱԶԱՐՅԱՆ Սերգեյ Գառնիկի (1929–2011), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (1987), պրոֆ. (1981): Էդուարդ *Ղազարյանի* հայրը: ՀՀ ԳԱԱ արտ. անդամ: 1989–2007-ին՝ Գղտ. էկոնոմիկայի հայկ. ԳՀԻ տնօրեն: Աշխ-ները վերաբերում են գղտ. արտադր-յան արդյունավետության բարձրացման, շուկայական տնտ-յան ձևավորման խնդիրներին:

ՂԱԶԱՐՅԱՆ Սերոբ Ղազարի (1910–1962), լեզվաբան, խմբ.: Բանասիր. գիտ. դ-ր (1953), պրոֆ. (1954): Ռուբեն *Ղազարյանի* հայրը: 1937–48-ին՝ «Սովետական դպրոց» թերթի խմբ.: Հեղինակ է «Հայոց լեզվի համառոտ պատմություն» (1954), «Միջին հայերեն» (գիրք Ա, 1960), «Հայոց գրական լեզվի պատմություն» (հ. 1, 1961) և այլ աշխ-ների:

ՂԱԶԱՐՅԱՆ Ստեփան Լևոնի (ծ. 1935), մարզիկ, մարզիչ, մրցավար: ԽՍՀՄ ս. վ. (1955), ՀԽՍՀ (1962), ԽՍՀՄ (1968) վ. մ., ըմբշամարտի միջազգ. բարձրագույն կարգի մրցավար (1974): 1987–91-ին՝ «Հայաստան» մարզ. ընկ-ների խորհրդի նախագահ: 1991-ից՝ Հունաստանի հունահռոմ. ըմբշամարտի ազգ. հավաքականի մարզիչ: 1965-ից՝ օլիմպ. խաղերի և աշխարհի ու Եվրոպայի առաջնությունների մրցավար, գլխ. մրցավար: 1987-ից՝ Ըմբշամարտի միջազգ. ֆեդերացիայի անդամ, հրահանգիչ-համադասող:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ, Կամբոջայի Թագավոր., Ըմբշամարտի միջազգ. ֆեդերացիայի ոսկե, արծաթե, բրոնզե շքանշաններ, ոսկե դիպլոմ, ոսկե սուլիչ:

ՂԱԶԱՐՅԱՆ (Կազարով) Վազգեն Ավետիսի (Ավդեյի, 1927–1991), ճարտարագետ-էլեկտրիկ: ԽՍՀՄ պատվ. էներգետիկ, վաստ. շինարար: Ռաֆայել *Ղազարյանի* եղբայրը: 1960-ին ղեկավարել է ՉԺՀ ջէկերի մոնտաժման աշխ-ները, 1963-ին՝ Բելոյարսկի ԱԷԿ-ի մոնտաժի ղեկ.: 1986-ից՝ ԽՍՀՄ Ատոմէներգո նախ-յան կապիտալ շին-յան գլխ. վարչության պետ: Ղեկավարել է Հրազդանի ՊՇԷԿ-ի և ՀԱԷԿ-ի մոնտաժման աշխ-ները: Ձերմուկում կառուցել է էներգետիկների առողջարանը: Ղ-ին է վստահվել վթարից հետո Չեռնոբիլի ԱԷԿ-ի սև արկղի բացումը (1986):

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (3), «Պատվո նշան» շքանշաններ:

ՂԱԶԱՐՅԱՆ Վահան Հովսեփի (1918–2002), բուսաբան, բույսերի ֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ-ր (1951), պրոֆ. (1952): ՀՀ ԳԱԱ ակադ. (1974, թղթ. անդամ՝ 1965-ից): Վիկտորյա և Քնարիկ *Ղազարյանների* հայրը: 1949–88-ին՝ ՀՀ ԳԱԱ բուսաբ-յան ինստ-ի (1994–2002-ին՝ պատվ.) տնօրենն, 1970–92-ին՝ ՀՀ ԳԱԱ կենսբ. գիտ-նե-րի բաժանմունքի ակադ. քարտուղար: Աշխ-ները վերաբերում են բարձրակարգ բույսերի անհատ. զարգացման օրինաչափություններին, նաև ծերացման ֆիզիոլոգ. էության հարցերին:

ՂԱԶԱՐՅԱՆ Վարազդատ Համայակի (ծ. 1937), գազարդ-յան ոլորտի մասնագետ: Տեխ. գիտ. դ-ր (1994): Մոսկվայի նավթի և գազի պետ. համալսարանի պրոֆ.: ԽՍՀՄ գյուտարար (1985), ՌԴ Մինէներգոյի վաստ. աշխատող (1997), 1992-ից՝ «Պողզեմգազպրոմ» ԲԲԸ գլխ. տնօրենի 1-ին տեղակալ: Գազի, նավթի և գազ. կոնդենսատի ստորգետնյա պահման գիտ. դպրոցի հիմնադիրներից: ՌԴՊԳԱ (2000) և Լեոն. գիտ-յունների ակադ-ի (1998) անդամ:

ՂԱԶԱՐՅԱՆ Վիգեն Հովհաննեսի (ծ. 1943), արվեստաբան: Արվեստագիտ. դ-ր (1992): ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2006): Գագիկ *Ղազարյանի* եղբայրը: Հեղինակ է «Սարգիս Պիծակ» (1981), «Սյուժետային մանրանկարը Կիլիկիայում (XIII դ-ի վերջ–XIV դ-ի սկիզբ)» (1984), «Մեկնութիւնք խորանաց» (2004), «Հայ արվեստի պատմություն հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (համահեղ., 2009), «Հայ միջնադարյան կերպարվեստի պատմություն» (համահեղ., 2013) աշխ-ների: Աշխարհաբարի է վերածել Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» պոեմը, Դիոնիսիոս Արիոպագացու գրվածքները:

ՀՀ Պետ. մրց. (2009), ԿԳՆ (2008), ՀՀ վարչապետի (2011) հուշամեդալներ, ՄՆ «Գրիգոր Նարեկացի» մեդալ (2013):

ՂԱԶԱՐՅԱՆ Վիկտորյա Վահանի (ծ. 1943), բույսերի ֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ-ր (1992): Վահան *Ղազարյանի* դուստրը, Քնարիկ *Ղազարյանի* քույրը: Զբաղվել է պտղատու ծառատեսակների հարմարվողականության բարձրացման ֆիզիոլոգ. հիմունքների մշակման հարցերով:

ՂԱԶԱՐՅԱՆ Վրույր Սարգսի (1902–1991), անասնաբույժ: Անասնաբուժ. գիտ. դ-ր (1948), պրոֆ. (1948): Աշխ-ները վերաբերում են խեկ-ների ժանտախտի, խշխշան պալարի, լեպտոսպիրոզի, մատղաշների վարակիչ հիվանդությունների նկարագրմանը, դրանց դեմ պայքարի և բուժման միջոցառումների մշակման խնդիրներին:

ՂԱԶԱՐՅԱՆ Փեփրոնե Իվանի (ծ. 1946), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դ-ր (1990): Աշխ-ները վերաբերում են ալիլային ու հոմոալիլային միացությունների և նրանց օքսիդների ռեակցիաների տեսությանն ու սինթետիկ առնչություններին:

ՂԱԶԱՐՅԱՆ Քնարիկ Վահանի (ծ. 1946), նյարդաֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ-ր (1991), Վահան *Ղազարյանի* դուստրը, Վիկտորյա *Ղազարյանի* քույրը: Աշխ-ները վերաբերում են հարթ մկանահյուսվածքի ավտոմատիզմի հարցերին:

ՂԱԶԱՐՅԱՆ Ֆրունզիկ Գաբրիելի (ծ. 1937), մանկավարժ, մարզ. գործիչ: Մանկավարժ. գիտ. դ-ր (1978), պրոֆ. (1979): Ֆիզկուլտուրայի և սպորտի վաստ. գործիչ (2007): ՄԳԱ (1998) անդամ: ՀՀ ս. վ. մ. (1990), ՀՀ ՖԿՀՊԻ-ի ուս. գծով (1976), գիտ. հարցերով (1998) պրոռեկտոր: Աշխ-ները վերաբերում են տարբեր տարիքի անձանց ֆիզ. դաստիարակության տես. հարցերին:

ՂԱԶԱՐՅԱՆՑ (Գազարով) Էդուարդ Երվանդի (1936–1996), կոմպոզիտոր, ակորդեոնահար: 1979–85-ին՝ ԼՂԱՄ երգի-պարի պետ. անսամբլի գեղ. ղեկ.: Հեղինակ է «Արցախի դուստր՝ Ռուզան» (1986) բալետի, «Պոեմ Գյումրու մասին» (1988, խոսք՝ Գ. Վանյանի)՝ սիմֆ. նվագախմբի և մեներգիչների համար, 3 սիմֆոնիայի, կանտատների, քնար. երգերի, խմբերգերի, գործիք. պիեսների: Էստրադայի արտիստների միջազգ. մրցույթի 1-ին մրց. (1968, Սոֆիա):

ՂԱԶԱՐՈՍՅԱՆ Գոհարիկ (1911–1968), կոմպոզիտոր, դաշնակահարուհի: Հեղինակ է կամեր. երկերի, դաշնամուր. 2 կոնցերտի, բալետի, պրելյուդների: Ստեղծել է ծավալուն «պատմողական» հայկ. երգի ինքնատիպ տեսակ (Ա. Իսահակյանի «Կտակ», Ս. Կապուտիկյանի «Սիրերգ», Մ. Մեծարենցի «Եկեսցե»):

ՂԱԶԲԵԳԻ Ալեքսանդր Միխայիլի (Զոփիկաշվիլի, 1848–1893), վրացի գրող: 1881-ին «Դրոեբա» (վրաց., Թիֆլիս) թերթում տպագրել է «Էլգուջա» վեպը՝ պատկերելով պատվի և ազատության համար մարտնչող լեռնցիներին: Հեղինակ է նաև «Էլիսո» (1882), «Հայրասպանը» (1882), «Յիկո» (1883), «Թշվառը» (1884), «Ձորի նահապետ Գոչան» (1884), «Հովիվը» (1885) վիպակների: Հայ. հրատարակվել է «Պատմվածքներ» (1948) ժող-ը:

ՂԱԶԻ Իբրահիմ (Իբրայ, Մինղազեև Իբրահիմ Ջարիֆովիչ, 1907–1971), թաթար գրող: Հեղինակ է Թաթարստանի հետեղ. շրջանի 1-ին տասնամյակը պատկերող «Անմոռանալի տարիներ» (1949–66) ինքնակենսագր. եռերգության, նավթագործ բանվորների մասին «Սովորական մարդիկ» (1955) վեպի, նաև վիպակների, պատմվածքների:

Թաթար. ԻԽՍՀ Պետ. մրց. (1969):

ՂԱԶԻ (արաբ.՝ ղազա – պատերազմել), 1. *ղազավաթի* մասնակիցներ: 2. Ջորապետի պատվ. տիտղոս մահմեդ. երկրներում:

ՂԱԶԻ ԼԻՃ, ՀՀ Կոտայքի մարզում՝ Գեղամա լ-վահանի հվ-արլ-ում՝ 2230 *մ* բարձր-յան վրա: Երկ.՝ 300 *մ*, լայն.՝ 200 *մ*, մակերեսը՝ 0,08 *կմ*², առլգն խոր.՝ 3 *մ*:

ՂԱԶԻԵՎ (Ղազիյան) Գրիգոր Նիկիտայի (1883–1955), նավթաբդյունահանման բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1947), պրոֆ. (1939): Ադրբ. ԽՍՀ ԳԱ ակադ. (1949): Ադրբ. ԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1940): Էրաստ *Ղազիևի* հայրը: Աշխ-ները վերաբերում են նավթաբդյունահանության տեսության զարգացման և տեխնիկայի կատարելագործման հարցերին:

Լենինի, ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի և «Պատվո նշան» շքանշաններ:

ՂԱԶԻԵՎ (Գազիև, Ղազիյան) Էրաստ Գրիգորի (ծ. 1931), հիդրոէներգետիկ-հիդրոտեխնիկ: Տեխ. գիտ. դ-ր (1980): Գրիգոր *Ղազիևի* որդին: 2002-ից՝ Մոսկվայի էներգետիկայի ոլորտի գեոդինամիկ. դիտարկումների գլխ. մասնագետ: Աշխ-ները վերաբերում են հիդրոտեխ.

կառույցների հուսալիության, ժայռ. զանգվածների մեխանիկայի հարցերին:

ՂԱԶԻԿՅԱՆ Արսեն (1870–1932), մատենագետ, թարգմանիչ, բանասեր, մանկավարժ: ՎԱնտՄՄ անդամ (1895–ից): 1898–1912–ին խմբագրել և լրացրել է Գարեգին *Զարբհանալյանի* «Հայկական մատենագիտություն» աշխ–ը, որը հետագայում հարստացրել է և դարձրել մատենագիտ. ինքնուրույն աշխ. (հրտ.՝ 1909–12–ին՝ «Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի» վերնագրով), կազմել է «Համառօտ ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ» (հրտ.՝ 1969) մատենագիտ–յունը:

ՂԱԶԻՆՅԱՆ Արշալույս Աբելի (1929–1999), գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1990), պրոֆ. (1993): Հեղինակ է «Առաքել Բաղիշեցի» (1971), «Մաշտոցից մինչև Նարեկացի» (1988), «Գրիգոր Նարեկացի. բանաստեղծական արվեստը» (1995), «Դիմաՙնությունը միջնադարյան հայ բանաստեղծության մեջ» («Ներսես Շնորհալի» ժող–ում, 1977): Կազմել և աշխատասիրել է (Պ. Խաչատրյանի հետ) Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» (1985) պոեմի գիտահամեմատ. բնագիրը: Թարգմանել է ֆրանս–ից:

ՂԱԶԻՆՅԱՆ Գագիկ Սերգեյի (ծ. 1955), իրավաբան: Իրավաբ. գիտ. դ–ր (2000), պրոֆ. (2003): ՀՀ վաստ. իրավաբան (2003): ՀՀ ԳԱԱ ակադ. (2014, թղթ. անդամ՝ 2006–ից): ԵՊՀ իրավագիտ–յան ֆակ–ի դեկան (1996–ից): Աշխ–ները վերաբերում են քր. դատավարության ապացույցների տեսության հիմնահարցերին:

ՀՀ իրավաբանների միության նախագահ (1997–ից), Իրավաբանների միջազգ. միության փոխնախագահ (2003–ից), ՌԿԱ արտ. անդամ (2012–ից):

ՀՀ արդարադատության խորհրդի իրավաբան–գիտական անդամ (2013):

ՀՀ «Մխիթար Գոշ» մեդալ (1999):

ՂԱԶԻՆՅԱՆ Իշխան Գիգոլի (1927–2015), միլիցիայի գեն–մայոր (1978): 1975–84–ին՝ ՀԽՍՀ ՆԳ փոխնախարար:

ՂԱԶ–ՂԱԶ, տղամարդկանց հայկ. ժող. պար, նմանող. շարժումներով տոտեմ. թռչնապար: Բոլոր պարողները դալար ճիպոտներով են («մտրակներ»): Պարելու ընթացքում «մայրն» աստիճանաբար «հանում» է շորերը, մյուսները կրկնում են շարժումները, ուշացողներին մտրակում են:

ՂԱԶՆԵՎԻՆԵՐ, մահմեդ. հարստություն, կառավարել են Ղազնիների պետությունը (X–XII դդ.): 962–ին հիմնադրել է Ալփ–Թեգինը: Հզորության է հասել Մահմուդ Ղազնիի օրոք (998–1030), երբ Ղ.–ի պետության մեջ են մտել ժամանակակից Աֆղանստանի տարածքը, Իրանի, Միջին Ասիայի, Հնդկաստանի մի շարք մարզեր: 1170–80–ական թթ–ի վեջերին վերացրել են *ղորիները*:

ՂԱԶՎԻՆ Համդալլահ Մոստոուֆի (1281–մոտ 1350), պարսիկ պատմաբան, աշխարհագետ: Աշխ–ները վերաբերում են Իրանի XIII–XIV դդ–ի պատմությանը:

ՂԱԶՎԻՆ, ք. Իրանի հս–ում: Բն.՝ 370 հզ. (2010): Գղտ. մթերքի առևտր. կենտրոն է: Կան սննդի, թեթև, մետաղամշակման արդ–յան, գորգերի արտադր–յան և այլ ձեռն–ներ: XVI–XVII դդ–ում՝ մանրանկարչության կենտրոն:

Հայերը Ղ.–ում հաստատվել են 1880–ական թթ–ին. տեղափոխվել են Սպահանից, Համադանից, Թավրիզից են: Գործել է Սբ Հռիփսիմե եկեղեցին (1870): Հայերի թիվը 1970–ական թթ–ին կազմել է 450–500 ընտանիք (շուրջ 1500–2000 բնակիչ), որոնց գերակշիռ մասը 1980–ական թթ–ին տեղափոխվել է Թեհրան:

ՂԱԶՎԻՆԻ Համդալլահ (1281–1349/50), պարսիկ պատմաբան, աշխարհագետ: Աշխ–ները վերաբերում են Իրանի XIII–XIV դդ–ի պատմությանը: Հեղինակ է «Ընտիր պատմություն» (ձոնել է մեծ վեզիր Ռաշիդ ադ–Դինին), «Գիրք հաղթության», «Սրտերի զվարճությունը» (այստեղ ներկայացված է նաև Հայաստանի XIII–XIV դդ–ի տնտ. աշխարհագրությունը) աշխ–ների:

ՂԱԶՈՒՄՅԱՆ Արուս Գուրգենի (1909–1970), դերասանուհի: Ադրբ. ԽՍՀ վաստ. արտիստ (1954): 1933–ից՝ Ստեփանակերտի դրամատիկ. թատրոնի դերասանուհի (Կրուչինինա՝ Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», Զեմմա՝ Է. Վոյնիչի «Բոռ», Լուիզա՝ Ֆ. Շիլլերի «Մեր և խարդավանք», Տատիկ՝ Ա. Կրոնինի «Բրոուդիի ամրոցը», Անույշ՝ Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար», Նուրար՝ Ա. Պապայանի «Աշխարհն, այո, շուռ է եկել», ևն):

ՂԱԼԱՄ (արաբ. – խոսք, դատողություն), մահմեդ. աստվածաբանության սպեկուլյատիվ հոսանք. ծագել է VIII–IX դդ–ում մութազիլիտների շրջանում՝ ոչ ուղղափառ տարբերակով, IX–X դդ–ում աշարիթները և մատուրիդները հարմարեցրել են սուննի ուղղափառներին:

ՂԱԼԱՅԱՆ Լավրենտ Բահաթուրի (ծ. 1938), նկարիչ, քանդ.: Հեղինակ է գրաֆիկ. («Կատարելություն», 1984, ևն), գեղանկարչ. («Ղարաբաղի հորովել», 2001–05, շարք, ևն) գործերի, կոմպոզիցիաների, դիմաքանդակների, նաև «Վասն Հայրենյաց» համալիր–հուշարձանի (2001, Ստեփանակերտ): Որդին՝ **Սասուն Ղ.** (ծ. 1975), նկարիչ: Հեղինակ է «Գեհենն» (1996), «Միլենիում» (2003), «Մայրություն» (2004), «Դժոխք» (2005) և այլ գեղանկարների:

Միջազգ. (1984, Բեռլին, 1986, Մոսկվա), ԼՂՀ Եղիշեի անվ. Պետ. (1999) մրց–ներ:

ՂԱԼԱՉՅԱՆ Ռոմելլա Միքայելի (1910–1996), մանրէաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1956): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1970): Ուսումնասիրել է բույսերի բակտերիային հիվանդությունները:

ՂԱԼԻԲ Միրզա Ասադուլլա խան (1797–1869), հնդիկ բանաստեղծ: *Ղուրանի* և *սուֆիականության* գիտակ: Գրել է ֆարսով և ուրդուով: Նրա մարդասիր. բանաստեղծությունները միավորել են դաս. և ժամանակակից պոեզիաները:

ՂԱԼԻՄ (թուրք.), գլխագին հարկացուի համար, որը տալիս են փեսացուն կամ նրա ազգականները հարկացուի ծնողներին կամ ազգականներին: Ղ. որպես սովորութային մնացուկ՝ պահպանվել է Արևելքի մի շարք երկրներում:

ՂԱԼՈՒՄՅԱՆ Լևոն Մամիկոնի (ծ. 1940), ճարտ.: Նրա նախագծերով Նալբանդյան գ–ում կանգնեցվել են ՀՄՊ–ում (1941–45) զոհվածներին նվիրված (1972), Ստեփանակերտում՝ Ալեք Մանուկյանի (1999), Երևանում՝ Վիլյամ Սարոյանի (2000), Անդրեյ Սախարովի (2001) հուշարձանները, կառուցվել Խնկո Ապոր անվ. մանկ. գրադարանը (համահեղ., 1978, ՀԼԿԵՄ մրց., 1981), «Հայերկրաբանություն» թանգարանը (1986): Գյումրիի վերականգնման համար կազմել է Մարմաշենի շրջանի մանրամասն հատակագծման (1989–90) և կառուցապատման (1990–91), Ամերիկ. Կարմիր խաչի կառուցած բնակելի թաղամասի (1990–2001) նախագծերը:

«Տարվա լավագույն կառույց» միջազգ. ճարտ. ստուգատեսի դափնեկիր (1995):

ՂԱՀՀԱՐ Աբդուլլա (1907–1968), ուզբեկ գրող: Ուզբ. ԽՍՀ ժող. գրող (1967): Հեղինակ է վեպերի («Կոշչինաոի կրակները», 1951–52, ևն), վիպակների («Հեքիաթներ եղելության», 1965, «Մեր», 1968, ևն), պատմվածքների («Աշխարհը երիտասարդանում է», 1933, և այլ ժող–ներ), պիեսների («Մետաքսե սյուզանե», 1950, ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1952):

ՂԱՀԲԱՄԱՆՅԱՆ Կիմ Հարությունի (1942–2014), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (2000), պրոֆ. (2005): Մասնակցել է Շահումյան–Գետաշեն տարածամասի ինքնապաշտպ–յան կազմակերպմանը: 1992–ից՝ *«Տաճի ղողանջներ»* թերթի հիմնադիր–խմբ.: Աշխ–ները հիմնականում վերաբերում են Հս. Արցախի հիմնախնդիրներին:

ՂԱՄԱՋՅԱՆ Մաթևոս Աբելի (Գամազով Մատվեյ Ավելևիչ, 1811–1893), արևելագետ, գրող, թարգմանիչ, դիվանագետ: 1839–56–ին դիվանագիտ. աշխ. է կատարել Թուրքիայում, Եգիպտոսում, Պարսկաստանում: 1848–52–ին՝ Թուրքիայի և Պարսկաստանի սահմանների բաժանման միջնորդ հանձնաժողովի քարտուղար–թարգմանիչ: 1864–ից՝ պետ. խորհրդական: Թարգմանել է Ֆիրդուսու, Սաադիի, Հաֆեզի, Խայամի, Շեքսպիրի գործերից: Ռուս. աշխարհագր. ընկ–յան (1852), Լազարյան ճեմարանի խորհրդի (1865) անդամ:

ՂԱՄԲԱՐՅԱՆ Լուիզա Գագիկի (ծ. 1977), դերասանուհի: ՀՀ վաստ. արտիստ (2014): 1995–ից՝ ԵԳԹ–ի դերասանուհի (Լեդի Մակբեթ՝ Վ. Շեքսպիրի «Մակբեթ», Քլեմենտին՝ Գ. Գորինի «Մոռանալ Հերոստրատին», Այծեմսիկ՝ Վ. Չալդրանյանի «Չայն լռության կամ Վեցերորդ պատվիրանը», Խոսրովիդուխտ՝ Պ. Զեյթունցյանի «Խոր վիրապ», ևն): Նկարահանվել է «Խենթ հրեշտակը», «Տերևաթափ Անտարեսի վրա», «Շնորհակալություն, հայրիկ», «Անավարտ թռիչք», «Հանի–մանի» ֆիլմերում:

ՀԹԳՄ «Արտավազդ» մրց. (2009, 2013):

ՂԱՄԲԱՐՅԱՆ Լևոն Սարգսի (1923–1990), ֆիզիոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (1960), պրոֆ. (1961): Բացահայտել է, որ գլխուղեղի խոռոչիստ կառուցվածքները (պոչավոր կորիզ, նշաձև կորիզ, հիպոկամպ ևն) էվոլյուցիայի որոշակի փուլում (սողուններ, թռչուններ ևն) կարևոր դեր են խաղում շարժող. և պայմանառեֆլեկտորային կարգավորման գործում:

ՂԱՄԲԱՐՅԱՆ Կարեն Սարտինի (ծ. 1959), ռադիոֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (2013), պրոֆ. (2015): Աշխ–ները վերաբերում են կիսահաղորդիչների, կիսահաղորդչ. սարքերի ֆիզիկային և տեխնոլոգիային, նաև նանոէլեկտրոնիկային ու նանոտեխնիկային:

ՂԱՄԲԱՐՅԱՆ Մարիա Ստեփանի (ծ. 1925), դաշնակահարուհի, կլավեսինահարուհի: ՀՀ (1966), ՌԴ (2005) վաստ. արտիստ: Պրահայի Կաոլովի համալսարանի պատվ. պրոֆ. (1998): Ստեփան *Ղամբարյանի* դուստրը: Նվագացանկում՝ հայ, ռուս, եվրոպ. դաս. և արդի կոմպոզիտորների երկեր: Նրա խմբագրությամբ

լույս են տեսել Ֆ. Շոպենի 3 պիեսները, «Երաժշտություն» (ռուս., 1974) ձեռնարկը:

ՀՀ «Սիվսես Խորենացի», Հայաստանի երաժշտ. ընկ-յան «Կոմիտաս» (երկուսն էլ՝ 2016) մեդալներ:

ՂԱՄԲԱՐՅԱՆ Պետրոս Պողոսի (1899–1934), երկրաբան: Ստեփան *Ղամբարյանի* եղբայրը: Ուսումնասիրել է մերձերևանյան շրջանի, Հրազդան գետի միջին ավազանի երկրր. կառուցվածքը (Արզականի մարմարի, Երևանի տուֆերի, կավերի, գիպսի ևն), կազմել է երկրր. քարտեզ:

ՂԱՄԲԱՐՅԱՆ Ստեփան Պողոսի (1879–1948), քիմիկոս, հայկ. քիմ. դպրոցի հիմնադիրը: Քիմ. գիտ. դ-ր (1937), պրոֆ. (1926): ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1944): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1935): Պետրոս *Ղամբարյանի* եղբայրը, Մարիա *Ղամբարյանի* հայրը: Ուսումնասիրել է օրգ. նյութերը գերօքսիդներով օքսիդացնելու ռեակցիաները: Բացահայտել է երկֆենիլամինի հեշտությամբ օքսիդանալու հատկությունը և առաջինն է ստացել քառաֆենիլ հիդրազին: Զբաղվել է նաև Հայաստանի տեղ. այրվող թերթաքարերի, եթերայուղատու բույսերի ուսումնասիրությամբ, Երևանի կարբիդի գործարանի հիմնադրումից հետո՝ նաև ացետիլենի քիմիայով: Ականի բռնադատվել է (1938), հետագայում (1944)՝ արդարացվել:

ՂԱՄԲԱՐՈՎ Յուրի Ստեփանի (1850–1926), իրավաբան, սոցիոլոգ. ուղղության ներկայացուցիչ: Փարիզի հաս. գիտ-ների բարձրագույն ուս. դպրոցի (1900) հիմնադիրներից: Դասախոսել է Բրյուսելի համալսարանում, 1884–99-ին՝ ՄՊՀ-ում, 1906-ից՝ Ս. Պետերբուրգի պոլիտեխ. ինստ-ի քաղաքաց. իրավունքի ամբիոնի վարիչ: 1919–20-ին՝ ԵՊՀ առաջին ռեկտորը: Ղ-ի խմբագրությամբ լույս է տեսել «Հասարակական-իրավաբանական գիտությունների ժողովածուն» (1899): «Գրանատ» հանրագիտ. բառարանի խմբագր. կոլեգիայի անդամ:

ՂԱՄԲԱՐՈՎ Սպարտակ Սեմյոնի (ծ. 1944), իմունաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1981), պրոֆ. (1990): ՀՀ ԲԳԱ ակադ. (2001): 1996-ից՝ ԵՊԲՀ Ալերգաբանության և կլինիկ. իմունաբանության կլինիկայի վարիչ: Աշխ-ները վերաբերում են իմունիտետի կարգավորման մեխանիզմներին, նյարդաներզատ. և իմուն. համակարգերի փոխազդեցությանը, բնականոն և ախտաբան. պայմաններում լիմֆոցիտների իոնափոխադրման համակարգերին, ալերգ. հիվանդությունների ախտածնությանը: ՌԴ բժշկատեխ. ակադ-ի (2001), ԵԳԱ (2001) անդամ:

ՂԱՆԱԼԱՆՅԱՆ Արամ Տիգրանի (1909–1983), բանագետ-բանասեր: Բանասիր. գիտ. դ-ր (1970), ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1977, թղթ. անդամ՝ 1965-ից): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1967): Հովհաննես *Ղանալանյանի* եղբայրը: Հեղինակ է «Հայ շինականի աշխատանքի երգերը» (1937), «Մ. Աբեղյանն իբրև ֆոլկլորագետ» (1946), «Ն. Մառը և հայ բանահյուսությունը» (1968, «Մառը և հայագիտության հարցերը» ժող-ում), «Ավանդապատում» (1969), «Դրվագներ հայ բանագիտության պատմության» (1985), «Հայ գրականությունը և բանահյուսությունը» (1986) և այլ աշխ-ների: Կազմել և խմբագրել է «Հայ ժողովրդական հեքիաթներ» (1950), «Առածանի» (1960) ժող-ները: Գրի է առել և հրատարակել «Մասնա ծռեր»-ի 2 պատում:

ՂԱՆԱԼԱՆՅԱՆ Հովհաննես Տիգրանի (1911–1994), գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1948), պրոֆ. (1948): Արամ *Ղանալանյանի* եղբայրը: Հեղինակ է «Իսահակյանի լիրիկան» (1940), «Ավետիք Իսահակյան» (1955), «Պետրոս Դուրյան» (1957), «Վահան Տերյան» (1960), «Դանիել Վարուժան» (1961) և այլ աշխ-ների, «Հոդվածներ և հուշեր» (1979, 1991), «Համաստեղություն» (1984), «Հուշ-դիմանկարներ» (1987) հոդվածների ու հուշերի ժող-ների:

ՂԱՆԴԻԼՅԱՆ Պապին Արտաշեսի (1929–2001), բուսաբան, գենետիկ-ընտրասեռումնաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1973), պրոֆ. (1974): ՀԳԴԱ ակադ. (1994), 1994-ից՝ ակադ. քարտուղար: 1978–92-ին՝ ՀԳԻ պրոռեկտոր: Հայտնաբերել ու նկարագրել է Հայաստանում աճող վայրի ցորենի, գարու, աշորայի, այծակնի նոր տեսակներ և տարատեսակներ, կազմակերպել Հայաստանում և աշխարհում մշակաբույսերի վայրի ազգակիցների գենոֆոնդի պահպանման աշխ-ները: Ստեղծել է ցորենի, ցորեն-աշորային սորտեր: Ղ-ի ջանքերով է ստեղծվել «Էրեբունի» արգելոցը:

ՀՀ «Անանիա Շիրակացի» մեդալ:

ՂԱՆԴԻԼՅԱՆ Յոլակ Հովհաննեսի, **Կանթեղ** (ծ. 1943), գրաֆիկ, նկարիչ: Նկարազարդել է Հ. Մելքոնյանի «Հարցաքննություն» (1977), Ա. Սահակյանի «Ասք Անդրանիկ զորավարի մասին» (2008), Ա. Պարսամյանի «Ծառ նռնենի» (2005), Հ. Սևանի «Հեքիաթներ» (2006), Ս. Մուրադյանի «Մայրիկն ու հայրիկը» (2007) և այլ գրքեր: Հեղինակ է ժամանցախաղ. գրքերի:

ՂԱՆԹԱՐՋՅԱՆ Սարգիս Լևոնի (1939–1997), տնտեսագետ: Տնտեսագիտ-յան դ-ր (1980), պրոֆ. (1982): Աշխ-ները վերաբերում են քիմ. տեխնոլոգիաների տիպային գործընթացների տեխ-մաթ. մոդելավորման, մտավոր սեփականության գնահատման, ինովացիոն կառավարման, մարքեթինգի հարցերին:

ՂԱՆՁԻԼ (Allium ursinum), **վայրի սխտոր, սխտորուկ**, շուշանազգիների ընտանիքի խոտաբույսերի ցեղ: ՀՀ-ում հանդիպում է Տավուշի և Լոռու մարզերում: Մննդի մեջ օգտագործում են մատղաշ տերևները:

ՂԱՆՁԼԱՄԱՆԵՐ (Hellborus), **եղերորոս, մրտիտակ, քրիստոսածաղիկ**, գոբտնուկազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 20 տեսակ՝ առավելապես Եվրոպայի հվ-ում (այդ թվում՝ Ուկրաինայում) և Կովկասում, ՀՀ-ում՝ 1՝ կովկաս. Ղ.՝ Լոռու մարզի անտառներում և անտառեզրերին: Ծաղկում է ձմռանը և վաղ գարնանը: Կոճղարմատը պարունակում է սրտային գլիկոզիդներ, օգտագործում են բժշկության մեջ: Թունավոր է, գեղազարդիչ, որոշ տեսակներ՝ մեղրատու:

ՂԱՋԱՐԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ, **Կաջարական հարստություն**, Իրանում 1796–1925-ին: Հիմնադրել է Աղա-Մահմեդ խան Ղաջարը: Ղ. ի-յան մայրաքաղաքը Թեհրանն էր: XIX դ-ի սկզբներին Ռուս. կայսրության դեմ անհաջող պատերազմների հետևանքով հարստությունը կորցրել է իր տիրույթները (այդ թվում՝ Արլ. Հայաստանը): Երկրում սկսված ժող. (*Բաբիների ապստամբություններ 1848–52*, ***Իրանական հեղափոխություն 1905–11***) և ազգ-ազատագր. (1918–22) շարժումները թուլացրել են Ղ. ի-յան իշխանությունը: 1925-ի հոկտ-ին Իրանի V մեջլիսը որոշում է ընդունել Ղ. ի-յան տապալման մասին. դեկտ-ին իշխանության գլուխ է անցել *Փահլավիների հարստությունը*:

ՂԱՋԱՐՆԵՐ, ժողգ Հս. Իրանում, ծագումով՝ *կրզլրլբաշների* ցեղից, 30 հզ. մարդ (2010): Լեզուն պատկանում է թյուրք. լեզվախմբին: Դավանանքը՝ շիա, մասամբ՝ սուննի մահմեդականություն: XVIII դ-ի վերջին Ղ-ի հզորացած խավից առաջացել է *Ղաջարական հարստությունը* (1796–1925):

ՂԱՍՄԱՔՅԱՆ Միհրան Գրիգորի (1870–1910), ռենտգենաբան: Որպես զինվ. բժիշկ մասնակցել է իսպանա-ամերիկ. պատերազմին, որի ավարտից հետո 1903–10-ին՝ Ֆիլադելֆիայի հիվանդանոցի ռենտգենաբան. լաբորատորիայի հիմնադիր-ղեկ.: Աշխ-ները վերաբերում են չարորակ ուռուցքների ռենտգենաբանության հարցերին: Հեղինակ է «Ստվերագրություն» (վերահրտ.՝ 1907, գերմ.) ուս. ձեռնարկի: Նյու Յորքի բժշկ. ընկ-յան նախագահ, ԱՄՆ-ի էլեկտրաթերապևտների ընկ-յան փոխնախագահ: Մահացել է ռենտգեն. ճառագայթումից ստացած այրվածքների հետևանքով:

ՂԱՐԱԲԱՂ (թյուրք.՝ ղարա – սև, բաղ – այգի), *Ուտիք* և *Արցախ* նահանգ-ների տարածքներին XIV դ-ից օտարների տված անվանումը: Հետագայում «Ղ.» անվանումը վերաբերել է ավելի փոքր տարածքի: Ներկայում Ղ. ընդգրկում է Արցախի մի մասը՝ ԼՂՀ-ն, Մուխանքի (Մուղանի) դաշտն ու Տրտու (Թարթառ) գետի ափերին փռված Շահումյանի, Աղդամի, Բարդայի շրջանները և Կասում-Իսմայիլի՝ նախկին Թարթառի շրջանի հվ. մասը: Այժմ գործածական են Լեռն. Ղ. և Դաշտ. Ղ. անվանումները, որոնցից 1-ինը ԼՂՀ-ի տարածքն է, 2-րդը՝ դրանից արլ. ընկած Ղարաբաղյան կամ Մուղանի (մի մասը) դաշտը:

«ՂԱՐԱԲԱՂ», գր., հաս. եռօրյա թերթ (1911–12, Շուշի): Խմբ-հրտ.՝ Ն. Յարամիշյան (փաստացի՝ Վրթանես Փափազյան):

«ՂԱՐԱԲԱՂ» ԿՈՄԻՏԵ, **Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե**, հիմնադրվել է 1988-ի մայիսին, գլխավորել է հայ ժողգ-ի պայքարը ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ի հետ միավորելու համար (տես *Ղարաբաղյան ազատագրական շարժում*): Ստեղծվել է Իգոր *Մուրադյանի* նախաձեռնությամբ: Կոմիտեի մեջ մտել են Բաբկեն *Արտաքցյանը*, Համբարձում Գալստյանը, Սամվել Գևորգյանը, Ռաֆայել *Ղազարյանը*, Սամսոն Ղազարյանը, Ալեքսան Հակոբյանը, Վազգեն *Մանուկյանը*, Աշոտ Մանուչարյանը, Վանո *Սիրադեղյանը*, Դավիթ Վարդանյանը, Լևոն *Տեր-Պետրոսյանը*: Կոմիտեն կազմակերպել ու ղեկավարել է ժողգ-ի ցույցերն ու հանրահավաքները: 1988-ի դեկտ-ի և 1989-ի օգոստ-ի ՀԽՍՀ ԳԽ մասնակի ընտրություններում պատգմ-ներ ընտրված Աշոտ Մանուչարյանը, Լևոն Տեր-Պետրոսյանը և Ռաֆայել Ղազարյանն զգալի ազդեցություն են ունեցել ԳԽ հետագա գործունեության վրա: «Ղ.» կ-ի գրեթե բոլոր անդամներն ընդգրկվել են հետագայում ստեղծված *Հայոց համազգային շարժման* (ՀՀՇ) հիմնադիր վարչության կազմի մեջ: ՀՀ անկախությունից (1991) հետո, ներքին գաղ. և քաղ. տարաձայնությունների հետևանքով, «Ղ.» կ. պառակտվել է, և նրա մի շարք անդամներ դուրս են եկել նաև ՀՀՇ-ից:

ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌ, հայ-ի «ում» ճյուղի ամենամեծ բարբառը: Խոսվում է ԼՂՀ-ում, Ջանգեզուրում, Կապանի, Դիլիջանի, Շամշադինի և այլ շրջաններում:

Ունի երկաստիճան ձայնեղազուրկ (պ–փ) բաղաձայն. համակարգ:

ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ, տես *Սյունիքի բարձրավանդակ*:

ՂԱՐԱԲԱՂԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Արցախի լեռնաշղթա, Փոքր Կովկասի արլ. լ–ճյուղերից՝ Հայկ. լ–աշխարհի հս–արլ. եզր. մասում: Երկ.՝ 125 *կմ*: Ամենաբարձրը կենտր. ժայռոտ, սրածայր հատվածն է՝ Կուսանաց լ–շղթան՝ համանուն զագաթով (2832 *մ*): Նշանավոր են Մեծ Քիրս (2724 *մ*), Դիզափայտ (2478 *մ*) լ–գագաթները: Լիսագորի լ–անցքով (2080 *մ*) անցնում է Գորիս–Ստեփանակերտ մայրուղին: Տարածքում է ինադար. *Ազոխի քարանձավային համալիրը*: Կան երկաթի, բազմամետաղների, ոսկու, ծծմբային հրաքարի, կրաքարի, մարմարի պաշարներ:

ՂԱՐԱԲԱՂԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆ, վարչաքաղ. միավոր (1747–1822) *Արցախ* և *Սյունիք* նախ–ների տարածքում: Պարսկաստանի վարչ. միավորներից, 1805–ից՝ Ռուս. կայսրության կազմում:

ՂԱՐԱԲԱՂԻ ՁԻ, լեռն. հեծկան ձիերի ցեղ: Ստացվել է ինագույն ժամանակներում Հայկ. բարձրավանդակում՝ պարսկ., թուրքմ., արաբ. ձիերի տրամախաչումից: Միջին բարձր–յան է՝ ունի համաչափ մարմնակառուցվածք, դիմացկուն է երկար ճանապարհներին: Արտահանվել է տարբեր երկրներ:

ՂԱՐԱԲԱՂԻ ՈՒՍՏԱ ՂԱՄԲԱՐ (1830–ական թթ.–1905), նկարիչ: Ստեղծել է հիմնականում դեկորատիվ գեղանկարչ. գործեր: Ձևավորումներում գերակշռում են բուս. զարդամոտիվները, որմնանկարներում երբեմն տեղադրել է պարսկ. արվին բնորոշ փսիանի կամ սիրամարգի նրբագեղ պատկերներ:

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ, **Արցախյան ազատագրական շարժում**, հաս–քաղ. շարժում ԼՂ–ի (1991–ի սեպտ. 2–ից՝ ԼՂՀ) ինքնորոշման նպատակով: Սկսվել է 1988–ի փետր. 12–ին, նախաձեռնել են Արթուր Մկրտչյանը և «*Կռունկ*» կոմիտեի անդամները (Ի. Մուրադյան, Գ. Հայրապետյան, Է. Աբրահամյան և ուր.): 1988–ի փետր. 20–ին ԼՂԻՄ մարզխորհրդի XX գումարման արտահերթ նստաշրջանը որոշում է ընդունել դիմել Ադրբ. ԽՍՀ և ԽՍՀՄ ԳԽ–ներին՝ ԼՂԻՄ–ը Ադրբ. ԽՍՀ–ի կազմից դուրս բերելու և ՀԽՍՀ–ի կազմի մեջ ընդգրկելու մասին: ՀԽՍՀ–ում սկսվել են արցախահայության հետ համերաշխության ցույցեր ու հանրահավաքներ: Ղ. ա. շ–մանն աջակցել են Զորի Բալայանը, Սիլվա Կապուտիկյանը, Սոս Սարգսյանը, Սերո Խանզադյանը, Ռաֆայել Ղազարյանը, Վիկտոր Համբարձումյանը և ուր.: Գորբաչովյան վարչակազմը շարժումը որակել է որպես «ազգայնամոլների» և «ծայրահեղականների» սադրանք: ՀԽՍՀ–ում և Արցախում այն համակարգելու նպատակով ստեղծվել է «*Ղարաբաղ» կոմիտե*: Ադրբեջանի իշխանությունները և ԽՍՀՄ կենտր. մարմինները դրան հակադրել են ուժի և բռնության քաղ–յուն: 1988–90–ին Կիրովաբադում (Գյանջա), Շամխորում, Խանլարում, Դաշքեսանում և Ադրբեջանի հայաշատ այլ վայրերում հայերի նկատմամբ իրականացվել են բռնություններ ու ցեղասպան. գործողություններ (տես *Բաքվի ջարդեր, Սումգայիթի ցեղասպանություն*): 1990–ին Ադրբեջանից բռնագաղթել է շուրջ 300 հզ. հայ, իսկ հայաստանաբնակ ադրբեջանցիներին տեղափոխել են Ադրբեջան: 1988–ի մարտին Երևանում հաստատվել է պարետային ժամ: Հուլիսի 15–ին ՀԽՍՀ ԳԽ–ն ԼՂԻՄ–ը ՀԽՍՀ–ի կազմի մեջ ընդգրկելու և այդ հարցը լուծելու խնդրանքով դիմել է ԽՍՀՄ ԳԽ: Վերջինս հուլիսի 18–ին մերժել է խնդրանքը:1989–ի հունվ–ին դադարեցվել է ԼՂԻՄ ժող. պատգմ–ների խորհրդի գործունեությունը, վերացվել է մարզկոմը, ստեղծվել հատուկ կառավարման կոմիտե՝ ԽՄԿԿ ԿԿ բաժնի վարիչ Ա. Ի. Վոլսկու գլխավորությամբ, ապա՝ Հանրապետ. կազմկոմիտե, սակայն իրավիճակը չի փոխվել: 1989–ի դեկտ. 1–ին ՀԽՍՀ ԳԽ և ԼՂԻՄ Ազգ. խորհուրդը (ընտրվել էր օգոստ. 16–ին) համատեղ որոշմամբ հռչակել է ՀԽՍՀ–ի և ԼՂԻՄ–ի վերամիավորումը: Սակայն կենտրոնը չեղյալ է համարել այդ որոշումը:

1991–ի ապրիլ–մայիսին ԽՍՀՄ ՆԳ զորքերի աջակցությամբ ադրբ. հատուկ նշանակության ջոկատները գրավել են Շահումյանի ենթաշրջանի Գետաշեն ու Մարտունաշեն գ–երը, իսկ 1992–ի ամռանը՝ Շահումյանի և Մարտակերտի շրջանները: 1991–ի սեպտ. 2–ին Ստեփանակերտում ընդունվել է «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին»: 1992–ից ԼՂ–ի հիմնախնդիրը միջազգայնացվել է: Սակայն Ադրբեջանը լայնածավալ ռազմ. գործողություններ է սկսել ԼՂՀ–ում և ՀՀ սահմանամերձ շրջաններում: 1992–ի մարտի 26–ին ստեղծվել է ԻՊԿ՝ Սերժ *Սարգսյանի* գլխավորությամբ: Մայիսի 8–9–ի ռազմ. գործողություններով ԻՊՈՒ–ի հրամ. Արկադի *Տեր–Թադևոսյանի* ղեկավարությամբ ազատագրվել է Շուշին, մայիսի 17–18–ին՝ Բերդաձորի ենթաշրջանը, ապա՝ Լաչինը (տես *Լաչինի մարդասիրական միջանցք*): 1992–ի օգոստ. 15–ին ստեղծվել է ՊՊԿ՝ Ռոբերտ *Քոչարյանի* նախագահությամբ: 1993–ի գարնանը հայկ. ուժերն ազատագրել են Մարտակերտի շրջանի մեծ մասը, ոչնչացրել թշնամու խոշոր ռազմ. հենակետերը:

Արցախյան պատերազմին մասնակցել են Հայաստանի և Արցախի կամավոր. ջոկատները և ԶՈՒ զորամիավորումները, խորհրդ. զորապետներ Գուրգեն *Դալիբալթայանը*, Քրիստափոր *Իվանյանը*, Նորատ *Տեր–Գրիգորյանը*, Անատոլի Ձինևիչը և ուր.: Պատերազմում զոհվել է շուրջ 7 հզ. ազատամարտիկ, այդ թվում՝ Լեոնիդ *Ազգալդյանը*, Սամվել *Շահմուրադյանը*, Աշոտ *Ղուլյանը* (Բեկոր), Յուրի *Պողոսյանը*, Վարդան *Ստեփանյանը* (Դուշման), Պետրոս *Ղևոնդյանը*, Վահագն *Վարդևանյանը*, Մնթե *Մելքոնյանը*, Շահեն *Մեղրյանը* և ուր.:

1994–ի մայիսի 12–ին Մոսկվայում ստորագրվել է զինադադարի համաձայնագիր, որը, մշտ. խախտումներով (արյունալի բռնկում տեղի է ունեցել 2016–ի ապրիլի 1–4–ին), գործում է ցայսօր:

Արցախյան հակամարտության քաղ. կարգավորման միջազգ. բանակցություններին մասնակցում են Մինսկի խմբի եռանախագահները (ՌԴ, ԱՄՆ, Ֆրանսիա), ՀՀ և Ադրբեջանի նախագահները, ԱԳ նախարարները: ՀՀ դիրքորոշման սկզբունքներն են՝ ա. կարգավորման հիմք պետք է լինի Արցախի ժողղ–ի ինքնորոշման իրավունքի ճանաչումը, բ. ԼՂՀ–ն ՀՀ–ի հետ պետք է ունենա ցամաք. կապ՝ հայկ. կողմի իրավազորության տակ, գ. ԼՂՀ անվտանգությունը երաշխավորված լինի միջազգայնորեն: Տես նաև *Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն*:

«ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ 1988–1994», թեմատիկ հանրագիտարան (2004, «Հայկական հանրագիտարան. հրատարակչություն»): Ներկայացված է Ղարաբաղյան պատերազմի վավեր. պատմությունը, հայ ժողղ–ի հերոս. պայքարը ԼՂՀ հռչակման և հանրապետության անվտանգության ապահովման գործում: Գլխ. խմբ.՝ Հովհաննես Այվազյան, պատասխանատու խմբ.՝ Հենրիկ Խաչատրյան:

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՈՂԽԱԲԻ ՑԵՂ, կաթնամսաբրդատու, կիսակոպտաբուրդ ցեղ: Հանդիպում է ԼՂՀ–ում և ՀՀ Սյունիքի մարզում: Մաքիների միջին կ. զ. 45–50 *կգ* է, արուներինը՝ 55–70 *կգ*: Մնդավի միջին բարձր.՝ 55–60 *սմ*, իրանի երկ.՝ 50–70 *սմ*: Մազածածկն սպիտակ է, երբեմն՝ սև ու մոխրագույն: 2 խուզից ստացվում է 2–2,5 *կգ* բուրդ: Այժմ մաքրացեղ վիճակում գրեթե չի հանդիպում:

ՂԱՐԱԲԵԿՅԱՆ Արամ Վաչիկի (1955–2014), դիրիժոր, կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2007): Բոստոնի «Սիմֆո Նովա» նվագախմբի հիմնադիր–ղեկ. (1983–90): Առաջինն է ղեկավարել Հ. Դեղլայանի «Տոպոֆոնոն» (1986), Է. Միրզոյանի «Էպիտաֆիան» (1988), S. Մանսուրյանի թավջութակի կոնցերտը (1989) և այլ գործեր: 1991–97–ին՝ Ուկրաինայի ազգ. սիմֆ., Ռադիոյի և հեռուստատեսության սիմֆ. նվագախմբերի գլխ. դիրիժոր, 1997–2010–ին՝ *Հայաստանի կամերային նվագախմբի* գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: Հեղինակ է «Վի մոդալ էտյուդներ»–ի՝ դաշնամուրի, «Քուանթում»–ի՝ 2 ֆլեյտայի, «Մեղիտացիոն»–ի՝ երգչախմբի և կամեր. նվագախմբի համար և այլ գործերի:

Բերքշիրի երաժշտ. կենտրոնի (1977), Լ. Վուլվսինի անվ. (1989, ԱՄՆ) մրց–ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2001):

ՂԱՐԱԲԵԿՅԱՆ Խաչիկ Արամի (1939–2008), գեղանկարիչ: 1964–89–ին՝ Վանաձորի դրամատիկ. թատրոնի գլխ. նկարիչ: Հեղինակ է բնանկարների («Լոռվա աշխարհ. տարվա եղանակներ», շարք, 1980–ական թթ., «Կարմիր խնձորենի», 1981, «Ահնիձորյան բակ», 2005), նատյուրմորտների («Նատյուրմորտ կարմիր բաժակով», 2001, «Նատյուրմորտ փշերով», 2002) և այլ գործերի:

ՂԱՐԱԳՅՈԶ (թուրք.՝ ղարա – սև, գյոզ – աչք), ստվերների տիկնիկ. թատրոնի ավանդ. ներկայացում (անվանումը՝ գլխ. հերոսի անունով): Էապես կապված է ոգին ստվերի ձևով պատկերացնելու, մեռնող և հառնող աստվածության պաշտամունքի հետ: Հայկ. միջավայրում տարածվել է հատկապես XIX դ–ում:

ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ Արթուր Արամայիսի (ծ. 1964), խմբ., վերլուծաբան: 2000–09–ին՝ «Գործնական և տեսական կառավարում» հանդեսի խմբ., 2010–ից՝ *«Միջազգային հարաբերություններ. հայկական աշխարհ»* հանդեսի հիմնադիր–խմբ.:

ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ Կոնստանտին Գրիգորի (1927–2013), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դ–ր (1968), պրոֆ. (1972): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1986–ից): Աշխ–ները վերաբերում են նյարդաքիմիայի, լիպիդների քիմիայի, արյան մակարդելիության համակարգի ֆիզիոլոգիայի և կենսաքի–

միայի խնդիրներին: Առաջինն է հաստատել արյունամակարդման կենսընթացի պայմանառեֆլեկտորային կարգավորման երևույթը, բացահայտել լոշտակի արմատների մզվածքի որոշակի բաղադրամասերի (հակաօքսիդանտների) արյան շաքարի քանակությունը նվազեցնող հատկությունները: ՀՀ նյարդաքիմիկոսների ընկ-յան նախագահ (1963–ից):

ՂԱՐԱԳՅՈՉՅԱՆ Սեմյոն Աբրահամի (1923–1984), մարմնամարզության մարզիչ: ՀԽՍՀ ս. վ. մ. (1956): ՀԽՍՀ ֆիզ. կուլտուրայի և սպորտի վաստ. գործիչ (1982): 1946-ին՝ մարմնամարզ. բազմամարտի հանրապետության չեմպիոն: 1950–60-ական թթ-ին մարզել է կանանց ՀԽՍՀ հավաքականները: 1968–72-ին՝ Հաբրավսլավիայի հավաքականի, 1972–84-ին՝ ՀԽՍՀ սպորտկոմիտեի մարմնամարզության գլխ. մարզիչ: Սաներից են Հրանտ *Շահինյանը*, Ալբերտ *Ազարյանը*, Ալբերտ Ազնավուրյանը և ուր.:

ՂԱՐԱԳՅՈՉՅԱՆ Վանդոս Համայակի (ծ. 1940), մանկավարժ: Մանկավարժ. գիտ. դ-ր (2007), պրոֆ. (2007): ՀՀ սպորտի վաստ. գործիչ (2007), Միջազգ. բարձրագույն կարգի մրցավար (1992): 1977-ից՝ ՀՀ ծանրամարտի ֆեդերացիայի փոխնախագահ: Աշխ-ները վերաբերում են ծանրամարտին, ֆիզկուլտուրայի ու սպորտի, օլիմպ. խաղերի պատմությանը: ՌԲՆԳԱ (2004) և ԵԲՆԳԱ (2011) անդամ:

Վանաձորի պատվ. քաղաքացի (2005): ԽՍՀՄ «Պատվո նշան» (1986), ՀՀ ԿԳՆ ոսկե (2009), ՀԱԳ «Հակոբ Մեղապարտ» (2013) մեդալներ, ՎՊՄՀ ոսկե հուշամեդալ (2016), ՄՕԿ-ի պատվոգիր (2001), Ամերիկայի կենսագր. ինստ-ի «Տարվա մարդ» (2009) ևն:

ՂԱՐԱԳՅՈՉՅԱՆ Տիգրան Աշոտի (1942–2002), ստոմատոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (1998): Աշխ-ները վերաբերում են ատամների և հարատամնային հյուսվածքի (պարօդոնտ) թթվային մեռուկացման և վաղաժամ ծերացման կանխարգելմանը: Առաջինն է փորձարկել և ներդրել հարատամնաբորբրի և ընդագրպանիկների կարծրախտի բուժման մեթոդ՝ սպիտակ լոշտակի բուսապատրաստուկով: Բնապահպանության և կենսագործունեության անվտանգության միջազգ. ԳԱ անդամ (1999):

ՌԴ Մ. Վ. Լոմոնոսովի անվ. մեդալ (2002):

ՂԱՐԱԳՅՈՒԼՅԱՆ Արշավիր Հարությունի, **Շար-Լաթ** (1883–1969), դրամատուրգ: Հեղինակ է «Կոմսոմոլ Աստղիկը» (1929), «Շուշանաձորում» (1930), «Փոքրիկ թյուրիմացություն» (1936), «Գաղտնի գործիչ» (1959) դրամաների, որոնք բեմադրվել են և հրատարակվել («Պիեսներ», 1966):

ՂԱՐԱԴԱՂԻ ԲԱՐԲԱՌ, հայ-ի «ս» ճյուղի բարբառ: Խոսվում է Արաքսի հովտի Խանասզա, Նորաշեն, Օղան, Ղուլուդի, Շավլի և Լումա գ-երում: Ունի եռաստիճան (բ–պ–փ) բաղաձայն. համակարգ:

ՂԱՐԱԳԱՂՅԻ ՊՈՂՈՍ, Ներսիսյան, Պողոս վարդապետ (մոտ 1790–1850/60), մանկավարժ: Դասավանդել է Էջմիածնում, Շուշիում, Թիֆլիսում, Թավրիզում, Ագուլիսում: Աշակերտներից են Մ. Թաղիադյանը, Խ. Աբովյանը, Ս. Նազարյանը, Ա. Արարատյանը և ուր.: Հեղինակ է «Համառոտութիւն հայկական քերականութեան» (1829) ուս. ձեռնարկի:

ՂԱՐԱԽԱՆՅԱՆ Գեղամ Հակոբի (1935–2014), իրավաբան: Իրավաբ. գիտ. դ-ր (2003): ՀՀ վաստ. իրավաբան (2003): Աշխ-ները վերաբերում են ընտանեկան, քաղաքաց. (ժառանգման, բնակարանային) իրավունքի հարցերին: ՌԴ հումանիտար ԳԱ թղթ. անդամ (1997): Ֆրիտյոֆ Նանսենն հիմնադրամի ոսկե մեդալ:

ՂԱՐԱՅԱՆ Հասմիկ Սեդրակի (ծ. 1941), բանաստեղծուհի-ազատամարտիկ: 1988-ից մասնակցել է Արցախյան շարժմանը: Հեղինակ է «Յավի ծաղիկ» (1993), «Երկնաքարեր» (1995), «Արցախյան գողգոթա» (1996), «Ժպիտս խաչից էլ է ծանր» (1998), «Այս աշխարհի հոգսերի հետ» (2007), «Վիրավոր աղավնի» (2011), «Հատընտիր» (2011) և այլ բանաստեղծությունների ժող-ների, «Գիսաստղի լույսը» (2006) հուշագրության:

ՂԱՐԱՆՖԻԼՅԱՆ (Գարանֆիլյան) Դովլաթ Գևորգի (1897–1952), նկարիչ-գորգագործ: Դիմանկարչության ժանրի հիմնադիրը հայ նոր շրջանի գորգարվ-ում: 1924-ին հայրենադարձել է, հիմնադրել գորգագործության առաջին արհեստանոցը: Գործերից են՝ «Ինքնանկար» (1930), Մ. Գորկու (1932, նվիրել է Մ. Գորկուն), Ֆ. Ռուզվելտի (1935, այժմ՝ նրա տուն-թանգարանում) գորգ-դիմանկարները:

ՂԱՐԱՋՅԱՆ Աշոտ Մելիքի (1923–2014), անասնաբույծ: Կենսբ. գիտ. դ-ր (1972), պրոֆ. (1981): Աշխ-ները վերաբերում են գղտ. կենդանիների մթերատվության, կերերի, սննդանյութերի օգտագործման վրա ակտիվ նյութերի ազդեցության խնդիրներին:

ՂԱՐԱՋՅԱՆ Գևորգ Հարությունի (Ս. Տ. Արկոմեդ, 1861–1936), քաղ. գործիչ, սոցիալ-դեմոկրատ, հայ առաջին մարքսիստներից: 1898-ին ընկերների հետ Թիֆլիսում հիմնադրել է 1-ին հայկ. բանվ. մարքսիստ. ընդհատակյա խմբակը: Հարել է ՌՍԴԲԿ մենշևիկ. թևին: 1917-ին ընտրվել է բանվորների և զինվորների Թիֆլիսի խորհրդի պատգմ. և Երևանի քաղաք. դումայի անդամ: 1922-ից դասավանդել է ԵՊՀ-ում: Հեղինակ է Այսրկովկասի քաղ. կյանքին վերաբերող աշխ-ների:

ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1918, տեղի է ունեցել մայիսի 24–28-ին՝ հայկ. և թուրք. զորքերի միջև, Մեծ Ղարաքիլիսայի (այժմ՝ Վանաձոր) մոտ: Հայկ. զորքը (հրամ.՝ *Թովմաս Նազարբեկյան*) ուներ 6 հզ. զինվոր, թուրք. զորքը (հրամ.՝ Քավադ բեյ)՝ 10 հզ.: Մարտերին մասնակցել են նաև շրջակա գյուղերի բնակիչները: Չնայած մեծ կորուստներին (շուրջ 2500 մարդ սպանված, վիրավոր և գերի)՝ Ղ. ճ-ի, Սարդարապատի և Բաշ Ապարանի ճակատամարտերի շնորհիվ հայկ. զորքերը կասեցրին թուրք. գերակշիռ ուժերի առաջխաղացումը՝ թույլ չտալով մտնել Երևան, Սևանի ավազան: Ղ. ճ-ի մասին թուրք հրամ. Վեհիբ փաշան ասել է. «Ղարաքիլիսայում հայերն ապացուցեցին, որ կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները»: Մարտերում աչքի են ընկել Նիկոլայ Ղորղանյանը, Աթաբեկ բեյ Մամիկոնյանը, պարուչիկ Գարեգին *Նժդեհը*, հրետանավոր Գուրգեն Տեր-Մովսիսյանը և ուր.:

ՂԱՐԻԲՅԱՆ Ազատ Թորգոմի (1923–1988), բալետի արտիստ, բալետմայստեր: ՀԽՍՀ ժող. արտիստ (1981): Տորոնտոյի մանկ. և երիտասարդ. (1988-ից՝ Ղ-ի անվ.), Հալեպի «Նոր սերունդ» (1980) հայկ. պարի անսամբլների և այլ խմբերի հիմնադիր: 1939–48-ին՝ ԵՕԲԹ-ի մենապարող (Կարեն՝ Ա. Խաչատրյանի «Գայանե», Բազիլ՝ Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ»), 1948–72-ին՝ բալետմայստեր (Բ. Սակիլարիի «Չոփչոփիկ», Գ. Հախինյանի «Ախթամար», «Լոռեցի Սաքոն», ևն), 1966–68-ին՝ Հայաստանի պարի պետ. և 1966–85-ին, միաժամանակ՝ Հայկ. ժող. երգի-պարի անսամբլների գլխ. բալետմայստեր: Համահեղինակ է «Հայկական ժողովրդական պարեր» (1964) աշխ-յան: Երիտասարդության և ուսանողների համաշխ. VI փառատոնի 1-ին մրց. (1957, Մոսկվա):

ՂԱՐԻԲՅԱՆ Ալլա Աշոտի (ծ. 1938), ֆիզիոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (1984): Աշխ-ները վերաբերում են կենդանիների վարքի ֆիզիոլոգիայի, բարձրագույն նյարդ. գործունեության խնդիրներին:

ՂԱՐԻԲՅԱՆ Արամ Սերոբի (1908–1991), գեղանկարիչ, քանդ.: 1946-ին հայրենադարձել է: Հեղինակ է գեղանկարչ. գործերի («Քաղաքային բնանկար», 1940, «Ձմեռ», 1968, «Արա Բեքարյան», 1974, «Նավահանգիստ», 1978, «Ծաղիկներով նատյուրմորտ», 1980), Հրանտ Ավագյանի (1946), Հարություն Կալենցի (1967) դիմաքանդակների, Կոմիտասի հուշարձանի (1979) ևն:

ՂԱՐԻԲՅԱՆ Արարատ Սահակի (1899–1977), լեզվաբան, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1940), պրոֆ. (1940): ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1960, թղթ. անդամ՝ 1947-ից): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1954): 1956–62-ին՝ ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստ-ի, 1962–70-ին՝ Հիմնարար գիտ. գրադարանի տնօրեն: Հեղինակ է «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն» (1937), «Հայերեն բարբառների մի նոր ճյուղ» (1940), «Հայ բարբառագիտություն» (1953), «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա» (1954), «Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ» (1958) և այլ աշխ-ների: Կազմել է «Ռուս-հայերեն բառարանը» (1968), «Դպրոցական ուղղագրական բառարանը» (համահեղ., 1968): ՀԽՍՀ Պետ. մրց. (1971):

ՂԱՐԻԲՅԱՆ Արարատ Սմբատի (1903–1952), նկարիչ: Հեղինակ է հիմնականում գրաֆիկ. գործերի («Աղբաշեցու դիմանկարը», 1928, փայտագրություն, «Վահրամ Փափազյանը Օթելլոյի դերում», 1939, փափուկ լաք, «Օպերայի և բալետի թատրոնի շենքը Երևանում», 1952, տուշ, ևն), նաև դիմանկարների, բնանկարների, գրքերի ձևավորումների:

ՂԱՐԻԲՅԱՆ Գրիգոր Մարգարի (1924–1991), ֆիզիկոս-տեսաբան: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1961), պրոֆ. (1972): ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1972, թղթ. անդամ՝ 1963-ից): Աշխ-ները վերաբերում են քվանտ. էլեկտրադինամիկային, աստղաֆիզիկային, տիեզ. ճառագայթներին և բարձր էներգիայի ֆիզիկային:

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան (2):

ՂԱՐԻԲՅԱՆ Գրիշա Ալեքսանի (ծ. 1930), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (1976), պրոֆ. (1978): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2000): Աշխ-ները վերաբերում են բնակչության կենսամակարդակի, ընտանիքների եկամուտների ու ծախսերի ձևավորման, անցում. տնտ-յունում աղքատության առաջացման և դրա հաղթահարման սոցիալ-տնտ. հարցերին:

ՀՀ «Մովսես Խորենացի» (2000), ԵՊՀ ոսկե (2007) մեդալներ:

ՂԱՐԻԲՅԱՆ Գրիշա Արտաշեսի (1927–2001), բանջարաբույծ-ընտրասերումնաբան: Գղտ. գիտ. դ-ր (1996): Աշակել է բանջարաբոստան. բույսերի մշակության

նոր տեխնոլոգիաներ: Ստեղծել է սեխի, դդմի, ձմերուկի, վարունգի սորտեր:

ՂԱՐԻԲՅԱՆ Էդուարդ Սարգսի (1938–2012), վնասվածքաբան-օրթոպեդ: Բժշկ. գիտ. դ-ր (1994), պրոֆ. (1995): Աշխ-ները վերաբերում են մատրիքսի օգնությամբ կեղծ հոդերի և չսերտաճած կոտրվածքների, ոսկրածուծաբորբի (օստեոմիելիտ)՝ շաքարախտից առաջացած բարդությունների բուժման, օզոնաբուժության հարցերին: Երևանի գլխ. վնասվածքաբան-օրթոպեդ (1996–ից):

ՌԲՆԳԱ թղթ. անդամ (2001), Փարիզի «Արարատ» միջազգ. ակադ-ի (2001), ԵԲՆԳԱ (2002) անդամ:

ԵՊՀՀ, ԵԲՆԳԱ Պ. Էոլիխի անվ. (2002) ոսկե մեդալներ:

ՂԱՐԻԲՅԱՆ Թամարա Արամի (1935–2004), ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դ-ր (1986): Արամ *Նալբանդյանի* դուստրը: Բացահայտել է, որ դանդաղ գազաֆազ և կատալիտիկ ռեակցիաներում ԷՊՌ-ի օգնությամբ կարելի է հայտնաբերել և նույնականացնել տարբեր ռեակցիաների ակտիվ կենտրոնները, ինչպես նաև հետևել դրանց կուտակման ու ծախսի կինետիկային:

ՂԱՐԻԲՅԱՆ Իգիթ Գարեգինի (ծ.1937), պատմաբան, հնագետ: Պատմ. գիտ. դ-ր (1996), պրոֆ. (2005): Աշխ-ները վերաբերում են Լոռե բք-ի, Թանահատի վան. համալիրի, Բջնի բերդի և այլ վայրերի հնագիտ. պեղումների արդյունքների վերլուծությանը: Բնության և հաս-յան մասին գիտ-ների միջազգ. ակադ-ի անդամ (2000):

ՀՀ «Մովսես Խորենացի», ԵՊՀ ոսկե (2007) մեդալներ:

ՂԱՐԻԲՅԱՆ Իշխան Ասատուրի (1924–2004), դերասան: ՀԽՍՀ ժող. արտիստ (1980): 1954-ից՝ ԵՊՀԹ, 1967–90-ին՝ ԵԴԹ, 1990–2001-ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասան (Կոռնվալի դուքս՝ Վ. Շեքսպիրի «Լիր արքա», Արթին աղա՝ Ե. Օտյանի «Սեր և ծիծաղ», Միկոլա՝ Ի. Ֆրանկոյի «Գողացված երջանկություն», ևն): Խաղացել է հեռուստաթատրոնում, նկարահանվել կինոյում («Ջրհորի մոտ», 1970, «Հուսո աստղ», 1978, «Երջանկության մեխանիկա», 1982, բոլորը՝ Հայֆիլմ):

ՂԱՐԻԲՅԱՆ Հրայր Արամի (1904–1978), կինոօպերատոր: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1969): 1930-ից՝ Մոսկվայի Սոյուզդետֆիլմ կինոստուդիայի օպերատոր («Լինում է, չի լինում մի աղջիկ», 1944, «Գնդի որդին», 1946, «Չուկը և Գեկը», 1953, «Հին տունը», 1970, «Ագարակ տափաստանում», 1971, ևն):

ՂԱՐԻԲՈՎ Հենրի Սարգսի (ծ. 1937), նյութագիտ-յան, մետաղագիտ-յան և հատուկ մեքենաշինության բնագավառների գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1984), պրոֆ. (1990): ՀՃԱ (1995), ՄՃԱ (1996), ՌՃԱ (1996) ակադ.: ՌԴ գիտ. վաստ. գործիչ (2003): Ռուսաստանում փոշեմետաղագործության հիմնադիրը: Զգալի ներդրում ունի մետաղների՝ ճնշումով մշակման տեսության և տեխնոլոգիայի, փոշեմետաղագործության, տաք իզոստատիկ մամլման բնագավառներում:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1988), Յ. Ս. Գագարինի (1990), ՌԴ ԳԱ Վ. Պ. Գլուշկոյի (1997), Ս. Պ. Կորոլյովի (2000), Մ. Վ. Կելդիշի (2001), Ն. Դ. Կուզնեցովի (2011) անվ., Միջազգ. (2011, Ճապոնիա) մեդալներ:

ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ Բագրատ Բեգլարի (1890–1920), կուս. գործիչ: ՌՍԴԲ(բ)Կ Ալեքսանդրապոլի կազմ-յան նախագահ (1917-ի դեկտ–1918-ի մայիս): Գևորգ *Ղարիբջանյանի* հայրը: 1919-ի սկզբից՝ Ալեքսանդրապոլի ընդհատակյա բոլշևիկ. կազմ-յան կոմիտեի քարտուղար: Մասնակցել է 1920-ի *Մայիսյան ապստամբությանը*, պարտությունից հետո ձերբակալվել է, դատապարտվել մահապատժի:

ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ Բագրատ Տիրանի (ծ. 1937), ուռուցքաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1976), պրոֆ. (1987): ՀՀ ԲԳԱ ակադ. (1999): 1976-ին կազմակերպել է (ԽՍՀՄ-ում առաջիններից) դեղանյութերի նախակլինիկ. փորձարկումների բաժին, որտեղ ուսումնասիրել են ՆՕՔԻ-ում ստեղծված 10 դեղանյութ և «Արմենիկում» պատրաստուկը, 1994-ին՝ Հայ-ամերիկա-գերմ. դեղագործ. համատեղ ձեռն-ը: Դ-ի հայտնագործած հակաուռուցք. 3 միացություն ներկայացվել է նախակլինիկ., 2-ը՝ կլինիկ. փորձարկումների, «ֆտորաֆուր» դեղամիջոցն արտոնագրվել է արտասահմանում: ՌԲՆԳԱ (1998, բժշկագիտ. բաժանմունքի ակադ. քարտուղար), Բնության և հաս-յան մասին միջազգ. ԳԱ (1989) անդամ:

ԱՄՆ-ի կենսագր. կենտրոնի «Տարվա մարդ» (1999): Կիտազատոյի (Ճապոնիա) Մեծ ոսկե (1991), ՌԳԱ Ի. Պ. Պավլովի (2000) և Վ. Ի. Վեռնադսկու (2001) անվ. արծաթե մեդալներ:

ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ Գևորգ Բագրատի (1920–1999), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1955), պրոֆ. (1956): ՀՀ ԳԱԱ ակադ. (1971): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1968): Բագրատ Բ. *Ղարիբջանյանի* որդին: 1961–68-ին՝ ՀԿԿ Լենինականի քաղկոմի 1-ին քարտուղար: 1968–77-ին՝ ՄԼԻ հայկ. մասնաճյուղի տնօրեն, 1977–84-ին՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտ-յան բաժանմունքի ակադ. քարտուղար: 1984–99-ին՝ ՀՀ ԳԱԱ հաս. գիտ-յունների տեղեկատվության կենտրոնի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են ԽՄԿԿ-ի, Հայաստանի նոր ու նորագույն շրջանի և հայ ժողղ-ի ազգ-ազատագր. պայքարի պատմությանը:

ՀՄՊ-ի 1-ին աստիճանի, Աշխ. կարմիր դրոշի, «Պատվո նշան», «Ժողովուրդների բարեկամության» շքանշաններ:

ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ Հակոբջան Ալեքսանդրի (1902–1987), նկարիչ, վերականգնող: Հեղինակ է դիմանկարների, բնանկարների, կոմպոզիցիոն պատկերների («Վիրահատություն», 1928, «Կարբիդի գործարանը: Երևան», 1933, ևն), ջրանկարների («Վեզուվիա», 1933–35, «Մայր իմ անուշ ու անգին», 1977, «Ներսես Շնորհալի», 1978, ևն): 1934-ից վերականգնման աշխ-ներ է կատարել Երևանի, Թբիլիսիի և Մոսկվայի թանգարաններում:

ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ Ղարիբջան Ալեքսանդրի (1896–1969), վնասվածքաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1949), պրոֆ. (1954): Բժշկ. ծառայության գնդ.: Մասնակցել է Մոնղոլա-ճապոն. (1939), Խորհրդա-ֆիննն. (1939–40) և Հայրենն. (1941–45) պատերազմներին. եղել է բանակի գլխ. վիրաբույժ: Աշխ-ները վերաբերում են կոնքազդրային հոդի հրազեն. վիրավորման վիրահատ. բուժման հարցերին: ԽՍՀՄ Կարմիր աստղ, ՀՄՊ 1-ին և 2-րդ աստիճանների շքանշաններ:

ՂԱՐՍԼՅԱՆ Էդուարդ Վիկտորի (ծ. 1945), կառավարման բնագավառի ճարտարագետ: Տեխ. գիտ. դ-ր (1995), պրոֆ. (1997): ՀՃԱ ակադ. (2003): 1994-ից՝ Երևանի կառավարման և տեղեկատվ. տեխնոլոգիաների համալսարանի ռեկտոր: Աշխ-ները վերաբերում են տեղեկատվ. ու հաղորդակց. տեխնոլոգիաների տես. և կիրառ. հիմնահարցերին:

ՂԱՐՍԼՅԱՆ Վարդ Վահագնի (1940–2012), նկարիչ: Հեղինակ է գեղանկարչ. ստեղծագործությունների, որոնց թեման հիմնականում հայրենի Ջավախքի բնաշխարհն է:

ՂԱՐՏԱՇ ԿԱՋՄՈՂ, XVI դ-ի քարգործ վարպետ: Գործել է Վայոց ձոր և Ծղուկ գվռ-ներում: Նրա 3 խաչքարերը (1573) Գնդեվանքում են (այժմ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Գնդեվազ գ.): Հեղինակ է կենցաղ. տեսարաններով հուշակոթողների, օրորոցաձև գերեզմանաքարերի («ձիաքար» կոչվող օրորոցաձև տապանաքար, Սյունիքի մարզի Ույծ գ-ի գերեզմանատուն):

ՂԱՓԱՄՄ, հայկ. կերակուր բրնձով, չրերով, չամիչով և ընկույզով (երբեմն՝ նաև մսեղիքով) լցոնած ջեռուփած դդում:

ՂԱՓԱՆՅԱՆ Արփենիկ Գրիգորի (1923–1996), գեղանկարչուհի: Գրիգոր *Ղափանցյանի* դուստրը, Ալեքսանդր Հ. *Գրիգորյանի* կինը: Հեղինակ է գեղանկարչ. («Պատանի նկարչուհին», 1959, «Մայրն ու երեխան, 1960, «Որոտանի ձորը», 1967, «Գայանեի դիմանկարը», 1983, ևն) և գրաֆիկ. գործերի:

ՂԱՓԱՆՅԱՆ Գրիգոր Այվազի (1887–1957), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ-ր (1942), պրոֆ. (1930): ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1943): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1942): Արփենիկ *Ղափանցյանի* հայրը: 1950–56-ին՝ ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստ-ի տնօրեն: Հեղինակ է «Լեզվաբանական դիսցիպլինա և լեզու» (1914), «Խեթական աստվածները հայերի մոտ» (1940), «Հայասան-հայերի բնօրրան» (1947), «Հայերենի խուռիտերեն բառերը» (1951), «Հայերենի և լազո-մեգրելական լեզուների փոխհարաբերության մասին» (1952, չորս էլ՝ ռուս.) և այլ աշխ-ների: Զբաղվել է նաև բարբառագիտ-յամբ:

ՂԱՓԼԱՆՅԱՆ Հրաչյա Մկրտչի (1923–1988), ռեժ., դերասան: Էմմա *Վարդանյանի* ամուսինը, Տաթևիկ *Ղափլանյանի* հայրը: ՀԽՍՀ (1966), ԽՍՀՄ (1973) ժող. արտիստ: Պրոֆ. (1986): 1938–52-ին՝ ԵՊՀԹ դերասան և ռեժ. (1953–58-ին՝ գլխ. ռեժ., 1960–62-ին՝ նաև տնօրեն), 1962–65-ին՝ ԵՕՔԹ-ի գլխ. ռեժ., 1969–77 և 1980–85-ին՝ ԵԴԹ գեղ. ղեկ. և տնօրեն (1973–75-ին՝ նաև Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի տնօրեն, 1977–79 և 1985–88-ին՝ գլխ. ռեժ.): 1965-ին հիմնադրել է ստուդիա-թատրոն (1969-ից՝ ԵԴԹ, 1990-ից՝ Ղ-ի անվ.): Դերերից են՝ Տրուֆալդինո (Կ. Գոլդոնիի «Երկու տիրոջ ծառան»), Վանյա (Վ. Կատաևի «Գնդի որդին»), բեմադրություններից՝ Շիլլերի «Սեր և խարդավանք» (1955), Վ. Շեքսպիրի «Ռիչարդ III» (1972), «Կորիոլան» (1978), «Արբատի զավակները» (ըստ՝ Ա. Ն. Ռիբակովի, 1988) ևն: Հեղինակ է պիեսների ժող-ի:

ՀԽՍՀ (1975, 1979), ԽՍՀՄ (1981) Պետ. մրց-ներ:

ՂԱՓԼԱՆՅԱՆ Տաթևիկ Հրաչյայի (1953–2010), դերասանուհի: ՀՀ վաստ. արտիստ (1987): Հրաչյա *Ղափլանյանի* և Էմմա *Վարդանյանի* դուստրը: 1974–93-ին՝ Երևանի դրամատիկ. թատրոնի դերասանուհի (Թագուկ՝ Ե. Օտյանի «Սեր և ծիծաղ», Արաքսյա՝ Պ. Զեյթունցյանի «Մեծ լռություն», Երանյակ՝ Հ. Պարոնյանի «Ատամնաբույժն արևելյան», Վայյա՝ Ա. Ն. Արբուզովի «Իրկուտսկյան պատմություն», Ժաննա՝ Ժ. Անույի «Ժաննա դ'Արկ», ևն):

1993–ից՝ ԱՄՆ–ում. մասնակցել է տեղի ներկայացումներին: Երևանում բեմադրել է «Իմ անուշ տղա» (2008) ներկայացումը:

ՂԱՓԼԱՆՅԱՆ Տարոն Արմենակի (ծ. 1948), կինոռեժ., կինոօպերատոր: 1972–ից՝ «Երևան» ստուդիայի ռեժ. («Սևան», 1986, «Նռնաձոր», 1994, «Ռեքվիեմ», 1997, «Պարսատիկ», 1999, «Բրաբիոն ծաղիկ որոնողը», 2010, ևն): Միջազգ. կփ–ի հատուկ մրց. (1987, Յուրմալա, Լատվիա):

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ Կարո (Կարապետ) Գրիգորի (1907–1976), հնագետ, պատմաբան, վիմագրագետ, բանասեր: Կորյուն *Ղափադարյանի* հայրը: Պատմ. գիտ. դ–ր (1954), պրոֆ. (1957): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): 1940–65–ին՝ ՀՊՊԹ տնօրեն: Հեղինակ է միջնադար. Հայաստանի ճարտ. հուշարձաններին, դրանց վիմ. արձանագրությունների վերծանման հարցերին նվիրված մի շարք երկերի ու հոդվածների:

ԽՍՀՄ «Պատվո նշան», Աշխ. կարմիր դրոշի շքանշաններ:

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ Կորյուն Կարոյի (ծ. 1936), ճարտ–յան պատմաբան: Կարո *Ղափադարյանի* որդին: Մասնակցել է Էրեբունի (1952–62), Արգիշտիխինիլի (1962–76), Դվինի (1976–ից) քաղաքատեղիների պեղումներին, չափագրել և ուսումնասիրել բրոնզիդար. և միջնադար. ամրոցներ ու բնակատեղիներ: Հեղինակ է «Արգիշտիխինիլի քաղաքի ճարտարապետությունը» մենագրության (1984, ՀՀ ԳԱԱ «Գովեստազիր»), համահեղ.՝ «Հայկական ճարտարապետության պատմության» 1–ին հատորի (1996):

ՂԱՖՈՒՐԻ Սաաֆիտ (Գաբդելմաժիտ) Նուրդանի (1880–1934), բաշկիր բանաստեղծ: Բաշկիր. ԽՍՀ ժող. բանաստեղծ (1923): Աշխ. հերոս (1920–ական թթ.): Բաշկիր. ազգ. մանկ. գրկ–յան հիմնադիրներից: Հեղինակ է «Մեր ազգի նկատմամբ» (1907) բանաստեղծությունների, «Կյանքի աստիճաններ» (1930) վիպակների ժող–ների, «Բանվոր» (1921) պոեմի, «Կարմիր աստղ» (1926) պիեսի և այլ գործերի:

ՂԵՅԼԱՆ, դայլան, գլգլակ, նարգիլե (պարսկ.՝ նարգիլ – կոկոսի ընկույզ, որից սկզբնապես պատրաստել են նարգիլեն), ծխելու սարք, որի մեջ ծուխն անցնում է ջրով լի անոթով և մաքրվում:

ՂԵՅՐԱԹԻ (Հովհաննես, 1824–1878), աշուղ: Պահպանվել են Ղ–ու որոշ երգեր՝ կարնո բարբառով: *Ջիվանու* խմբի հետ շրջագայել է Կովկասի հայաբնակ վայրերում:

ՂԵՎՈՆԴ, Ղևոնդ պատմիչ, VIII դ–ի պատմիչ: Շարունակելով *Մեր Եղիսեին*՝ շարադրել է իր «Պատմություն»–ը՝ ընդգրկելով 640–ական թթ–ի դեպքերից մինչև Հայաստանի արաբ. նվաճումը (VIII դ–ի սկիզբ): Նկարագրել է նաև արաբ զավթիչների դեմ հայոց ապստամբությունները (703, 748–750, 774–775), անդրադարձել արաբ–բյուզ. հարաբերություններին:

ՂԵՎՈՆԴ Ա. ԵՌԱՍՏԵՅԻ (ծ. թ. անհտ–548), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 545–ից:

ՂԵՎՈՆԴ ԵՐԵՑ, սուրբ Ղևոնդ, Ղևոնդ Վանանդեցի (ծ. թ. անհտ–454), եկեղեց. գործիչ, *Վարդանանց պատերազմի* առաջնորդներից: *Մեսրոպ Մաշտոցի* և *Սահակ Ա. Պարթևի* աշակերտներից: Մասնակցել է Շահապիվանի եկեղեց. ժողովին (444): 450–ի ամռանը գլխավորել է Անգղի բնակիչների հարձակումը պարսիկ մոգերի վրա: *Ավարայրի ճակատամարտում* (451) հայրենասիր. ելույթներով քաջալերել է հայ մարտիկներին, որի համար ստացել է «Ավարայրի արծիվ» պատվանունը: Ճակատամարտից հետո պարսիկները քահանայից դասին (9 մարդ, կոչվել են Ղևոնդյանք), այդ թվում՝ Ղ. Ե–ին ու 37 հայ նախարարներին տարել են Տիզբոն և գլխատել:

ՂԵՎՈՆԴԻՈՍ ՀԱՅԿԱԶՆ, Լևոն Հայկազն, Լեոնտիոս, IV դ–ի ճարտասան–փիլ., նորպլատոնական, քաղ–պետ. գործիչ: Սովորել է Աթենքում՝ *Պարոյր Հայկազնի*, *Լիբանիոսի* դպրոցներում: Վերադառնալով Փոքր Հայք՝ հիմնադրել է փիլ. դպրոց: Հուլիանոս կայսրը Ղ. Հ–ին նշանակել է Պաղեստինի և Գաղատիայի կառավարիչ:

ՂԵՎՈՆԴՅԱՆ Գևորգ Հարությունի (1895–1959), առողջապ–յան կազմակերպիչ: ՀԽՍՀ վաստ. բժիշկ: 1931–37–ին՝ ՀԽՍՀ առժողկոմ, 1943–ին և 1951–59–ին՝ ԵԲԻ ռեկտոր, 1944–49–ին՝ ՀԽՍՀ առողջապ–յան նախարար: Աշխ–ները վերաբերում են առողջապ–յան և դպրոցականների հիգիենայի հարցերին:

ՂԵՎՈՆԴՅԱՆ Պետրոս Արշալույսի, **Պետո** (1964–1994), Արցախի հերոս (2000, հետմահու): ԼՂՀ ՊԲ մայոր (1996, հետմահու): 1990–ից՝ Պռոշյանի կամավոր. ջոկատի հրամ–ի տեղակալ, Շուշիի առանձին գումարտակի փոխհրամ.: 1990–94–ին մասնակցել է ՀՀ սահմանամերձ շրջանների ու ԼՂՀ ինքնապաշտպ. և ազատագր. մարտերին:

ԼՂՀ «Մարտական խաչ» 1–ին աստիճանի և «Ոսկե արծիվ» (2000, հետմահու) շքանշաններ:

ՂԵՎՈՆԴՅԱՆ Ռուբեն Սարգսի (ծ. 1942), գեղանկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (2011): 1964–70–ին՝ «Երևան» հեռուստաստուդիայի նկարիչ–բեմադրող, 1970–78–ին՝ ԵԴԹ, Երևանի գլխ. նկարիչ: Հեղինակ է մեծածավալ որմնանկարների (Երևանի Խնկո–Ապոր անվ. կենտր. մանկ. գրադարանում, 1979–83 և «Երևան» հյուրանոցում, 2000), խորհրդանշ. կոմպոզիցիաների («Աստեղային ժամ», 1983, «Բյուրական», 1985, ևն), գեղանկարների («Նուռ», 2005, ևն):

ՂԵՎՈՆԴՅԱՆ Ռուդոլֆ Ռուբենի (ծ. 1952), դերասան: ՀՀ վաստ. արտիստ (2017): 1973–2005–ին (ընդհատումներով) և 2010–ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասան (Բաստերտ՝ Վ. Շեքսպիրի «Ձոն արքա», Արտակ, Գնդապետ՝ Ժ. Հարությունյանի «Հարսնացու հյուսիսից», «Ղազարը գնում է պատերազմ», Վասկա Պեպել՝ Մ. Գորկու «Հատակում», Վասիլկով՝ Ա. Ն. Օստրովսկու «Կատաղի փողեր», ևն): Նկարահանվել է «Նահապետ» (1977), «Քանի դեռ ապրում ենք» (1986), «Մենավոր ընկուզենի» (1986), «Որտե՞ղ էիր, մարդ Աստծո» (1992), «Ընկեր Փանջունի» (1993), «Լռության սիմֆոնիա» (2001) ֆիլմերում, ինչպես նաև հեռուստասերիալներում ևն:

ՂԵՎՈՆԴՅԱՆ Սարգիս Հարությունի (1904–1976), անասնաբույժ: Անասնաբուժ. գիտ. դ–ր (1956), պրոֆ. (1957): Աշխ–ները վերաբերում են գղտ. կենդանիների հիվանդությունների ախտորոշման, կանխարգելման և բուժման հարցերին:

ՂԵՎՈՆԴՅԱՆ Տիգրան Հակոբի (ծ. 1951), ախտաբան–անատոմ: Բժշկ. գիտ. դ–ր (2001): Աշխ–ները վերաբերում են ախտաբան. անատոմիայի, ձևաչափության, ստերեոլոգիայի տես. և գործն. հիմնախնդիրներին: Ղ–ի առաջարկած «Քանակական ֆունկցիոնալ անատոմիա» գիտ. ուղղությունը նորույթ է կենսաբ. համակարգերի թույլ օղակի բացահայտման, օրգանների փոխպատվաստման բնագավառներում:

ՂԱԶԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ, ստեղծվել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում ուսանած հայ երիտասարդների նախաձեռնությամբ: Առաջին ներկայացումը՝ 1859–ին (ղեկ–ներ՝ Հ. Քուչուբեկյան և Մ. Իսահակյան): Ներկայացումներ են կազմակերպել նաև Թ. և Պ. *Ֆաուլաճյանները*: 1881–ից ներկայացումները խաղացել են Պ. Գյանջումյանի տանը (ղեկ.՝ Ա. Սուլթան–Շահ): Օրիորդաց դպրոցի թատերաբեմում (1884) ելույթներ են ունեցել Պ. Ադամյանը, Վարդուհին, Վրույրը, Զաբելը և ուր.: 1900–ական թթ–ից գործել են Ղզլարի (ղեկ.՝ Մ. Սվեշնիկյան) թատերախումբը, Հայ դրամա–օպերետ. խումբը (1909–17), Հայ դերասան. ընկ–ը (1916–ից, ղեկ.՝ Հ. Շահեն): 1902 և 1905–ին ելույթներ են ունեցել Սիրանույշի, 1917–ին՝ Ա. Արմենյանի դրամա–օպերետ. և այլ խմբեր: 1930–ական թթ–ի սկզբին Ղ. հ. թ–ի վերջին ներկայացումներում գերակշռել են երաժշտ. կատակերգությունները:

ՂԱՐՆՈՅԱՆ (Գինոյան) Ռուբեն Վարդանի (ծ. 1954), կաթնագործության բնագավառի գիտնական: Գղտ. գիտ. դ–ր (2002), պրոֆ. (2002): ՌԴ պետստանդարտների Նիժինի Նովգորոդի կենտրոնի տնօրեն (2002–ից), «Նիժեգորոդսկի պիշչևիկ» (ռուս.) ամսագրի գլխ. խմբ. (1998): Աշխ–ները վերաբերում են սննդամթերքի արտադրյան տեխնիկայի, տեխնոլոգիայի, ինչպես նաև որակի հսկման և հավաստագրման հիմնախնդիրներին:

ՂԼԵԶՈՍ (Glezos) Մանոլիս (ծ. 1922), Դիմադրության շարժման հույն մասնակից (1941–44): Հունաստանի Ազգ. հերոս: Հակաֆաշիստ. պայքարի խորհրդանիշ. 1941–ի մայիսի 31–ի գիշերը Աթենքի Ակրոպոլիսի վրայից պոկել է (Ա. Սանթոսի հետ) ֆաշիստ. դրոշը: 1956–67–ին՝ ԷԴԱ–ի (Միասն. դեմոկրատ. ձախ կուս–յուն) քարտուղար, 1985–89–ին՝ նախագահ: 2007–ին մասնակցել է Եռարլուրում ՀԱՀԳԲ–ի եղբայր. գերեզմանի հուշարձանի բացմանը:

Լենինյան միջազգ. մրց. (1963):

ՂԼՏՃՅԱՆ Արսեն (1868–1943), իրավագետ: Աշակել է հայ ամուսնաընտանեկան իրավունքի ճյուղագրությունը: Արիական և սեմ. իրավունքների տարբերությունները բացատրել է ռասայական պատկանելությամբ, անտեսել իրավունքի զարգացման սոցիալ–տնտ. պատճառները:

ՂՈՂՈՒԲԵՐԻՉՔ Լանա Լևանի (ծ. 1928), վրացի կինոռեժ.: ՎԽՍՀ ժող. արտիստ (1979): Նկարահանել է «Ես տեսնում եմ արևը» (1965), «Երբ ծաղկել է նշենին» (1973), «Մի քանի հարցազրույց անձնական հարցերով» (1979), «Վալս Պեչորայի վրա» (1992) և այլ ֆիլմեր: Թարգմանել է Ու. Ուիթմենի և Ռ. Թագորի բանաստեղծություններից: ԽՍՀՄ Պետ. մրց. (1980):

ՂՈՉԻԿՅԱՆ Տարիել Վլադիմիրի (ծ. 1949), քիմիկոս–օրգանիկ: Քիմ. գիտ. դ–ր (2008), պրոֆ. (2010): Աշխ–ները վերաբերում են հինգանդամանի հագեցած լակտոնների տարացիկլային միացությունների սինթեզին և քիմ. հատկություններին, ինչպես նաև կառուցվածք–կենսբ. ակտիվություն կապին: ԵՊՀ ոսկե մեդալ (2010):

ՂՈՐԽՄԱՋՅԱՆ Նաթան Աղասու (1928–2006), ֆիզիկոս–տեսաբան: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1981), պրոֆ. (1982): Աշխ–ները վերաբերում են ռենտգեն. օպտուլյատոր.

ճառագայթմանը (հիմնադիրներից է), հայտնաբերել է այդ ճառագայթման սպեկտրի նեղացման երևույթը: Կանխագուշակել է այն պայմանները, որոնց առկայությամբ արագ էլեկտրոններով կարելի է ստանալ քվազիմիներնզուղորդված գամմա–ճառագայթում:

ՂՈՐՂԱՆՅԱՆ Ադամ Սողոմոնի (Կորգանով, 1846–1918), ռուս. բանակի գեն–լեյտ. (1905): Նիկոլայ *Ղորղանյանի* հայրը: 1891–99–ին եղել է Աստրախանի դրագունյան գնդի հրամ., 1899–1904–ին՝ հեծյալ դիվիզիայում՝ բրիգադի, 1904–05–ին՝ դիվիզիայի, 1908–ից՝ բանակ. կորպուսի հրամ.: Հեղինակ է «Հյուսիսային դրագունյան գնդի պատմությունը» գրքի (1884): Սպանել են բոլշևիկները: Ցար. կառ–յան մի շարք շքանշաններ:

ՂՈՐՂԱՆՅԱՆ Գաբրիել Գրիգորի (Կորգանով, 1880–1954), ռուս. բանակի գեն–մայոր: Գործոն մասնակցություն է ունեցել ԱՀՊ–ի Կովկաս. ռազմաճակատի գործողություններին, ապա՝ անդրկովկաս. իշխանությունների՝ Թուրքիայի դեմ պաշտպ. մարտերին: 1919–ին եղել է զինվ. կցորդ Փարիզի հաշտության խորհրդաժողովում: Այնուհետև հաստատվել է Փարիզում, որտեղ հրատարակել է «Հայերի մասնակցությունը համաշխարհային պատերազմին Անդրկովկասյան ռազմաճակատում (1914–1918)» (ֆրանս., 1927) հուշագրությունը:

Ֆրանսիայի Պատվո լեգեոնի և Ցար. կառ–յան մի շարք շքանշաններ:

ՂՈՐՂԱՆՅԱՆ, Կորգանով, Գենարիոս Հովսեփի (1858–1890), կոմպոզիտոր, դաշնակահար: Հեղինե, Մարիամ և Նինա *Ղորղանյանների* եղբայրը: Ջարգացրել է հայկ. պրոֆեսիոնալ երաժշտաձևերը: Հեղինակ է ռոմանսների, դաշնամուր. երկերի («Հայկական ռապսոդիա», «Կովկասյան ռապսոդիա» ևն), էտյուդների, մշակել է աշուղ. («Պաղ աղբյուրի մոտ»), ժող. («Սիրուհիս») երգեր:

ՂՈՐՂԱՆՅԱՆ Գրիգոր Նիկոլայի (Կորգանով, 1886–1918), հեղ. շարժման գործիչ: ՌՍԴԲԿ անդամ՝ 1905–ից: Ընտրվել է Կովկաս. բանակի ռազմահեղ. կոմիտեի նախագահ, 1918–ի մարտից՝ Բաքվի հեղ. պաշտպ–յան կոմիտեի անդամ, ապրիլից եղել է Բաքվի կոմունայի ԺԿԽ–ի ռազմածով. գործերի ժողկոմ: Բաքվի վրա գերմանա–թուրք. զորքերի հարձակման ժամանակ գլխավորել է կոմունայի զինված ուժերը: Գնդակահարվել է *Բաքվի 26 կոմիսարների* հետ:

ՂՈՐՂԱՆՅԱՆ (Տերյան–Կորգանովա) Հեղինե Հովսեփի (1864–1937), երգչուհի (քնարադրամատիկ. սոպրանո): Մարիամ, Նինա և Գենարիոս *Ղորղանյանների* քույրը: 1884–ից հանդես է եկել Թիֆլիսի, Մոսկվայի, 1899–ից՝ Խարկովի և այլ օպեր. թատրոններում (Ռոզինա՝ Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», Աիդա՝ Ջ. Վերդիի «Աիդա», Լիզա՝ Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա», ևն):

ՂՈՐՂԱՆՅԱՆ (Սվետադե) Մարիամ Հովսեփի, XIX դ–ի վերջ–XX դ–ի սկզբի երգչուհի (մեցցո–սոպրանո): Նինա, Հեղինե և Գենարիոս *Ղորղանյանների* քույրը: Եվրոպայի և ԱՄՆ նշանավոր օպեր. թատրոնների մեներգչուհի: 1905–ին Թիֆլիսում բացել է երգեցողության դասընթացներ:

ՂՈՐՂԱՆՅԱՆ Նիկոլայ Ադամի (Կորգանով, 1878–1921), ռուս. բանակի գնդ., հայկ. հեծելազոր. միացյալ գնդի հրամ., գեն–ի պաշտոնակատար (1919–ի մարտ): Ադամ *Ղորղանյանի* որդին: Մասնակցել է ԱՀՊ–ին: 1918–ին տեղափոխվել է Հայաստան, եղել է նախ՝ Լոռու գնդի, ապա՝ հեծելազոր. բրիգադի հրամ.: *Ղարաքիլիսայի ճակատամարտում* գործողությունները վարել է առաջին դիրքերում: 1918–ի օգոստ–ին նշանակվել է Բաշ Ապարանի ջոկատի հրամ., դեկտ–ին՝ Ալեքսանդրապոլի (Գյումրի), 1920–ից՝ Վաղարշապատի կայազորի պետ: Հայաստանի խորհրդայնացումից հետո ձերբակալվել է և *Համազասպի* ու մյուսների հետ կացնահարվել Երևանի բանտում:

ՂՈՐՂԱՆՅԱՆ (Դարիալի) Նինա Հովսեփի (1852–1896), երգչուհի (մեցցո–սոպրանո): Մարիամ, Հեղինե և Գենարիոս *Ղորղանյանների* քույրը: Հանդես է եկել եվրոպ. մի շարք երկրներում, 1880–ական թթ–ից՝ Թիֆլիսում: 1891–ին դասընթացներ է հիմնադրել (երգչուհի Մ. Ն. Կլիմենտովայի հետ) Մոսկվայում:

ՂՈՐՂԱՆՅԱՆ Ստեփան Ալեքսանդրի (1865–1925), պետ., հաս. գործիչ, գեն–մայոր: 1895–1910–ին եղել է Նոր Բայազետի, 1910–15–ին՝ Քութայիսի գավառապետ, 1919–20–ին՝ Կարսի նահանգապետ: Կարսի անկումից (1920–ի հոկտ. 30) հետո բնակություն է հաստատել Թիֆլիսում, որտեղ հրապարակել է ՀՀ Կառ–յանը դատապարտող հոդվածներ: Նոր Բայազետում անցկացրել է ջրանցք, բացել հիվանդանոցներ, եղել է Սևանա լճի նավագնացության կազմակերպիչներից, կառուցել է Բայազետից Վարդենիս 75–վերստանոց նոր ճանապարհ:

ՂՈՐՂԱՆՅԱՆ, Կորգանով, Վասիլ Դավթի (1865–1934), երաժշտագետ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1934): «Կավկազսկի վեստնիկ» գիտագր. ամսագրի հիմնադիրը (1900): Միջազգ. երաժշտ. ընկ–յան անդամ (1900): Ուսումնասիրել, հավաքել, համակարգել և հրատարակել է Լ. վան Բեթհովենի կյանքին վերաբերող փաստ. հարուստ նյութեր (գրքույկ՝ կոմպոզիտորի մասին, 1888, նամականին՝ շուրջ 1300 նամակ՝ 2 գրքով, 1900, 1904, «Կենսագրական էտյուդ», մենագրություն, 1909): Հրատարակել է նաև Կոմիտասի «Հայկական եկեղեցական երաժշտություն» և «Հայ գեղջուկ պարերգեր» աշխ–ները:

ՂՈՐՂԱՆՅԱՆՆԵՐ, հայ ազնվական. տոհմ: XVIII դ–ի վրացի պատմագիր Վախուշտիի հավաստմամբ՝ Ղ.–ի նախնի Ղորղանն իր գերդաստանով Հայաստանից (Սուրմառիի Ղորղան ամրոցից) 1415–ին գաղթել է Վրաստան, որտեղ ստացել է ազնվականի տիտղոս և կալվածքներ՝ Բորչալուի գվո–ում, ապա՝ Թիֆլիսի մոտ (Մեծ և Փոքր Էնագետ գ–երը): Վրաստանում Ղ. վարել են պալատ. և զինվ. պաշտոններ: Վրաստանը Ռուսաստանին միանալուց (1801) հետո պահպանել են ազնվական. իրավունքները:

ՂՊՏԻԱԿԱՆ ԳԻՐ, տառային գիր: Պատկանում է սեմ. լեզվաընտանիքին: Զևավորվել է II–III դդ–ում Եգիպտոսում: Ներառում է 24 հուն. գրեր և եգիպտ. դեմոտական գրի 8 նշան: Պահպանվել է միայն կրոն. առտնին գրագրություններում:

ՂՊՏԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, *ղպտիների* գրկ–ը IV–XVIII դդ–ում: Առաջին գրավոր հուշարձանները Հին և Նոր կտակարանների, քրիստ. աստվածաբան. երկերի ևնի թարգմանություններ են հուն–ից: Ամենահայտնի գրողը Շենուտեն է (V դար): *Ղպտիերենով* ստեղծվել է վարքագր. հարուստ գրկ., լայնորեն տարածվել են ճգնավորների մասին առասպելները: 1–ին հզ–ամյակի վերջին զարգացել է պոեզիան, գրվել են հեքիաթների և խրատ. բնույթի ստեղծագործություններ: Ղպտ–ը արաբ–ով փոխարինվելուց հետո նույնպես ստեղծվել են գործեր գրքային ղպտ–ով («Տրիադոն», պոեմ, XIV դ.), մինչև XVIII դ. գրվել են եկեղեց. հիմներ:

ՂՊՏԻԵՐԵՆ, աֆրո–ասիական լեզվաընտանիքի եգիպտ. ճյուղի լեզու (եգիպտ. լեզվի զարգացման վերջին փուլը): XI–XII դդ–ում դուրս է մղվել արաբ–ի միջոցով: Ունեցել է իր այբուբենը, որն առաջացել է հունականից: Որպես պաշտամունք. լեզու՝ պահպանվել է Ղպտի եկեղեցում:

ՂՊՏԻՆԵՐ, ժողդ, եգիպտացիների ազգակրոն. խումբ, հին եգիպտացիների հետնորդները: Արաբ. նվաճումից (VII դ.) հետո Ղ. են կոչվել արմատ. եգիպտացիները, ավելի ուշ՝ եգիպտացի քրիստոնյաները: Ընդհ. թիվը՝ 10–20 մլն (2014): Ապրում են նաև ԱՄՆ–ում, Ավստրալիայում, Քուվեյթում, Մեծ Բրիտանիայում, Սուդանում, Կանադայում, Լիբիայում ևն: Խոսում են արաբ.: Հավատացյալները հիմնականում Ղպտ. եկեղեցու հետևորդներ են, կան Ղպտի ավետարան. և Ղպտի կաթոլիկ. եկեղեցու հետևորդներ:

Հայ–ղպտ. հարաբերություններն ունեցել են մշակութ., կրոն. բնույթ, որոնք, սկզբնավորվելով վաղ միջնադարում, շարունակվում են ցայսօր: Ղպտի մատենագիրները ծանոթ են եղել հայ մատենագրությանը, մասնավորապես՝ Ագաթանգեղոսի «Պատմություն Հայոց»–ին, որից պահպանված արաբ. համառոտ խմբագրությունը թարգմանվել է ղպտի–ից:

ՂՐԻՄ, Ղրիմի Հանրապետություն, ՌԴ սուբյեկտ: Տարածքը՝ 26 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,9 մլն (2015): Մայրաքաղաքը՝ *Սիմֆերոպոլ*: Ազգ. կազմը՝ ռուսներ, ուկրաինացիներ, Ղրիմի թաթարներ, բելառուսներ, հայեր ևն: Մինչև 2014–ը եղել է Ուկրաինայի, 2014–ից՝ ՌԴ կազմում:

Պատմ. տարբեր ժամանակներում Ղ. վերահսկել են կիմերացիները, հոյները, սկյութները, գոթերը, հոները, բուլղարները, խազարները: Եղել է *Հին Ռուսական պետության*, Բյուզ. կայսրության, Ոսկե Հորդայի ենթակայության տակ: XIII դ–ում այն մասնակիորեն ենթարկվել է Վենետիկի և Ջենովայի հանրապետություններին, ապա կազմավորվել է *Ղրիմի խանությունը*: XV–XVIII դդ–ում եղել է Օսմ., XVIII–XX դդ–ում՝ Ռուս. կայսրության կազմում: 1921–ին կազմավորվել է Ղրիմի ԻԽՍՀ–ն, 1945–ին՝ ՌԽՖՍՀ Ղրիմի մարզը: 1954–ին փոխանցվել է Ուկր. ԽՍՀ–ի կազմ: 1991–ին վերականգնվել է Ղրիմի ԻԽՍՀ–ն: 2014–ի հանրաքվեով Ուկրաինայի կազմից դուրս եկել և միացել է ՌԴ–ին: ՄԱԿ–ը, արմ. պետությունները չեն ճանաչել հանրաքվեի արդյունքները և թ–կղզու միացումը Ռուսաստանին հայտարարել անօրինական: ՌԴ–ում մշակվել և իրականացնում են Ղրիմի տնտ–յունը Ռուսաստանի տնտ–յանն ինտեգրելու լայնածավալ ծրագրեր:

Ղրիմահայ գաղութը կազմավորվել է XI–XIII դդ–ում, երբ Բյուզանդիայի նվաճող. քաղ–յան, ապա սելջուկների և մոնղոլների արշավանքների հետևանքով հայության նկատելի մասը Բյուզ. կայսրության փոքրասիական և եվրոպ. տարածքներից անցել է թ–կղզի: 1330–ական

թթ–ին համայնքն ստվարացել է Ոսկե Հորդայից հայերի մեծ հոսքի, իսկ XV–XX դդ–ում՝ քաղ. և տնտ. պատճառներով Հայաստանից և հայաշատ վայրերից եկած հայ գաղթականների հաշվին: XIV–XVIII դդ–ում Ղ.–ում հայերը թվով եղել են 2–րդը՝ թաթարներից հետո: Ղրիմահայ մեծ գաղթավայրերից էին Կաֆան (*Թեոդոսիա*), Սուրխաթը (Ստարի Կրիմ)՝ մերձակա Սբ Խաչ վանքով, ավելի քան 10 եկեղեցիներով, Ղարասուբազարը (Բելոգորսկ)՝ առաքել. և կաթոլիկ հայ համայնքներով: 1736–ին հայերը հիմնադրել են Օրաբազար (Արմյանսկի բազար) ք–ը: Ղ.–ում են ծնվել Գաբրիել և Հովհաննես *Այվազովսկիները*, Ալեքսանդր *Սպենդիարյանը*, Քրիստափոր *Կարա–Մուրզան* և ուր.:

1993–ին Սիմֆերոպոլում ստեղծվել է Ղրիմահայոց ընկ–ը, որին պաշտոնապես ճանաչել է հանրապետության գերագույն իշխանությունը: Յալթայում, Թեոդոսիայում, Եվպատորիայում գործում են հայկ. եկեղեցիներ, ևս 5 քաղաքներում՝ կիրակնօրյա հայկ. դպրոցներ:1998–ին Սիմֆերոպոլում բացվել է 1–ին հայկ. քոլեջը: Հրատարակվում է «Մասյաց աղավնի» պաշտոնաթերթը, «Սուրբ Խաչ» և այլ պարբ–ներ: Ներկայում Ղ.–ում բնակվում են 20 հզ–ից ավելի հայեր, որոնք գործուն մասնակցություն ունեն հանրապետության հաս–քաղ., տնտ. և մշակութ. կյանքին:

ՂՐԻՄԻ ԱՍՏՂԱՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ ՌԴԱ, գբաղվում է Արեգակի վրա և Տիեզերքում կատարվող անկայուն շարժընթացների հետազոտմամբ: Աշակել են աստղերի փայլի հետազոտման և Արեգակի ու աստղերի մագնիս. դաշտերի չափման լուսաէլ. մեթոդներ, գալակտիկաների և թույլ աստղերի լուսանկարման էլեկտրոնաօպտիկ. փոխակերպիչներ, Արեգակի վրա կատարվող շարժընթացների կինոնկարահանման հատուկ սարքավորումներ: Հիմնադրվել է 1908–ին Յալթա ք–ից 21 *կմ* հեռու՝ Սիմեիզ ավանի մոտ, 1946–ից տեղափոխվել է Նաուչնի գիտավան (Բախչիսարայ ք–ից 12 *կմ* հեռու):

ՂՐԻՄԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆ, թաթար. պետություն *Ղրիմում* և հարակից տարածքներում 1443–1783–ին: Անջատվել է *Ոսկե Հորդայից*: 1475–ին դարձել է Թուրքիայի վասալը: XVI դ–ի սկզբից մայրաքաղաքը եղել է *Բախչիսարայը*: Ղրիմի խաները հարձակումներ են գործել դեպի ռուս., ուկր., մոլդ. և լեհ. տարածքներ: Վերացվել է ռուս–թուրք. պատերազմների արդյունքում, տարածքը միացվել է (1783) Ռուսաստանին: Ղ. խ–ում հայերը թվով 2–րդն էին (300 հզ–ից ավելի) թաթարներից հետո:

ՂՐԻՄԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ 1945, Յալթայի խորհրդաժողով, հակահիտլերյան դաշինքի 3 դաշնակից պետությունների ղեկ–ների (Ի. Վ. Ստալին, Ֆ. Դ. Ռուզվելտ և Ու. Չերչիլ) խորհրդաժողովը: Կայացել է Յալթայի մոտ փետր. 4–11–ին: Համաձայնություն է կայացվել Գերմանիայի վերջն. ջախջախման, նրա նկատմամբ դաշնակցային հսկողության, ռազմատուգանքների վերաբերյալ, ընդունվել են աշխարհի հետպատերազմյան վերաձևման, հատկապես՝ ՄԱԿ–ի ստեղծման ընդհանուր քաղ. սկզբունքները, նախատեսվել էր ԽՍՀՄ–ի պատերազմը Ճապոնիայի դեմ՝ Գերմանիայի կապիտուլյացիայից 2–3 ամիս հետո:

ՂՐԻՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ, գործել են XI դ–ից, զարգացել XIV–XV դդ–ում: Նշանավոր էին Սբ Անտոն անապատի դպրոցը (Կաֆայի մոտ, 1425–50) և Ստարի Կրիմի Սբ Խաչ վանքի ճեմարանը (XIV–XVII դդ.): Դպրոցներ են գործել նաև Ղարասուբազարի, Սուրխաթի հայկ. եկեղեցիներին կից, Ղրիմը Ռուսաստանին միանալուց հետո (1783) հիմնադրվել են Սիմֆերոպոլի մեկդասյան ծխական երկսեռ (1800) և երկդասյան ծխական (1860), կաթոլիկ հայերի (1850), Ղարասուբազարի երկսեռ (1816), հայ կաթոլիկների (1821) դպրոցները, Թեոդոսիայի Խալիպյան վարժարանը (1858): Դպրոցներ են բացվել նաև Կերչում, Արմյանսկում, Եվպատորիայում, Յալթայում: 1903–ին Ղրիմում գործել է ծխական երկսեռ 10 դպրոց: Ներկայում Ղրիմի մի շարք քաղաքներում գործում են հայկ. կիրակնօրյա դպրոցներ, 1998–ին Սիմֆերոպոլում բացվել է հայկ. քոլեջ:

ՂՐԻՄԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ, *Ղրիմում* գրված և նկարազարդված բազմաթիվ հայկ. ձեռագրերից շուրջ 300–ը Մնդ–ում են: XIII–XV դդ–ի լավագույն վարպետներից են *Գրիգոր Սուքիասյանցը*, *Կիրակոսը* (Ճաշոց, 1360, Մնդ., ձեռ. № 7741), Առաքելը, *Նպատերի* որդիներ *Ավետիսը* (Ավետարան, 1347, Մնդ., ձեռ. № 7742) և Ստեփանոսը, վերջինիս որդի Հովհաննեսը: Ղ. մ. դ–ի նշանավոր կենտրոններից էին Կաֆան (այժմ՝ Թեոդոսիա) և Սուրխաթը (այժմ՝ Ստարի Կրիմ): XV դ–ում մշակութ. կյանքն անկում է ապրել (թաթարների և թուրքերի գրավելուց հետո), XVII դ–ում գրչատների գործունեությունը վերականգնվել է: Գործել են նկարիչներ *Նաղաշ Էոլպեն*, *Նիկողայոս Ծաղկարարը* և *Խաչակիը*:

ՂՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄ 1853–56, Արևելյան պատերազմ, սկզբնապես ռուս–թուրք.՝ Մերձ. Արևելքում գերիշխանության համար: 1854–ից Թուրքիայի կողմից պատերազմի մեջ են մտել Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, 1855–ից՝ Սարդինական թագավորությունը: Կովկասյան կորպուսի հրամ–ն էր գեն. Բարսեղ *Բեհբութովը*: Կարսի գրավման ժամանակ (1855–ի նոյեմբ. 16) աչքի է ընկել գնդ. Միքայել *Լոռիս–Մելիքովը*: 1853–ի ռազմ. գործողություններով ռուս. զորքերը մտել են Մոլդովա և Վալախիա, հաղթանակներ տարել Այսրկովկասում, Սինոպի մոտ ոչնչացրել թուրք. նավատորմը: 1854–ին դաշնակիցները զորքեր են մտցրել Ղրիմ, շրջափակել Բալթիկ ծովը, սկսվել է *Սևաստոպոլի պաշտպանությունը* (1854–55): 1855–ին ընկել է Սևաստոպոլը, դադարեցվել են ռազմ. գործողությունները: Ավարտվել է *Փարիզի հաշտության պայմանագրով* (1856):

ՂՐԻՄԻ ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1944, ՀՄՊ–ի ժամանակ (08.04–12.05), խորհրդ. զորքերի [4–րդ Ուկր. ռազմաճակատ (բանակի գեն.՝ Ֆ. Ի. Տոլբուխին), Մերձծովյան առանձին բանակ (բանակի գեն.՝ Ա. Ի. Երեմենկո), Սևծովյան նավատորմ (ծովակալ՝ Ֆ. Ս. Օկտյաբրսկի), Ազովի ռազմ. նավատորմիղ (փոխծովակալ՝ Ս. Գ. Գորշկով)] համընդհանուր հարձակումը, որի արդյունքում ճեղքվել է գերմ. 17–րդ բանակի պաշտպ–յունը: Մայիսի 9–ին խորհրդ. զորքերը տիրել են Սևաստոպոլին և ազատագրել Ղրիմը: Ղ. ռ–յանը գործուն մասնակցություն է ունեցել 89–րդ հայկ. Թամանյան դիվիզիան: Գործողության հաջողությունը մեծապես նպաստել է Նելսոն *Սյուեհյանյանի* գրոհային ավիացիոն գունդը:

ՂՐՂԸԶԱԿԱՆ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Տյան Շանում: Երկ.՝ 375 *կմ*, բարձր.՝ մինչև 4875 *մ* (Արմ. Ալամեդին): Լանջերին տափաստաններ, անտառներ, բարձրլեռն. մարզագետիններ են, 3700 *մ*–ից բարձր՝ սառցադաշտեր:

ՂՐՂԸԶԵՐԵՆ, *ղրղզների* լեզուն, *Ղրղզստանի* պետ. լեզուն: Պատկանում է թյուրք. լեզվաընտանիքի ղրղզ–ղփչաղյան խմբին: Գրի հիմքում արաբ. (մինչև 1926–ը), լատ. (մինչև 1940–ը), ապա ռուս. այբուբենն է:

ՂՐՂԸԶՆԵՐ, թյուրքալեզու ժողդ., Ղրղզստանի հիմն. բնակչությունը (3,1 մլն, 1999): Համախմբված ապրում են նաև Ուզբեկստանի հս–արլ–ում (ավելի քան՝ 240 հզ.), Տաջիկստանի արլ–ում (ավելի քան՝ 80 հզ.), Աֆղանստանի հս–արլ–ում (1 հզ.), Պակիստանի հս–արմ–ում (60 հզ.), Չինաստանի հս–ում (160,8 հզ., 2000), ՌԴ–ում (31,8 հզ., 2002): Լեզուն՝ *ղրղզերեն*: Հիմնականում սուննի մահմեդական են:

ՂՐՂԸԶՍՏԱՆ, **Ղրղզստանի Հանրապետություն**, պետություն Միջին Ասիայում: Սահմանակից է Ղազախստանին, Ուզբեկստանին, Չինաստանին և Տաջիկստանին: Տարածքը՝ շուրջ 199,9 հզ. *կմ*², բն.՝ 6 մլն (2016): Մայրաքաղաքը՝ *Բիշքեկ*: Պետ. լեզուն՝ ղրղզերեն: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Բաժանված է 7 վարչ. մարզերի: Հավատացյալների մեծ մասը մահմեդական է: Անդամակցում է ՄԱԿ–ին, ԱՊՀ–ին, ՀԱՊԿ–ին, ԵՏՄ–ին ևն: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 2,4 հզ. ԱՄՆ դոլար է (2014): Արտահանում է բամբակ, էլեկտրաէներգիա, բուրդ, միս, ոսկի, սնդիկ, ուրան ևն, ներմուծում սպառող. ապրանքներ, վառելանյութ, տրանսպորտ. միջոցներ, շինանյութ, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ ղրղզ. սոմ:

Տարածքը VI–XII դդ–ում մտել է Թյուրք. խաքանության և կառլուկների, ապա՝ Կարախանյանների պետության կազմի մեջ, XIII–XVI դդ–ում՝ թաթար–մոնղոլների տիրապետության տակ: XIX դ–ի 1–ին կեսին մտել է Կոկանդի խանության, 1860–70–ական թթ–ին ներառվել է Ռուս. կայսրության (նախ՝ Թուրքեստանյան նահգ–ի, ապա՝ գեն–նահանգապետության) կազմի մեջ: 1917–18–ին հաստատվել են խորհրդ. կարգեր, 1924–ին ՌԽՖՍՀ կազմում կազմավորվել է Կարա–Կիրգիզ. (1925–ից՝ Կիրգիզ.) ԻՕ, 1926–ից՝ ԻՀ, 1936–ից՝ միութ. հանրապետություն՝ ԽՍՀՄ կազմում: Անկախություն է հռչակել 1991–ին՝ ԽՍՀՄ փլուզումից հետո:

Հայերը Ղ.–ում բնակություն են հաստատել դեռևս III–IV դդ–ում, երբ այս տարածաշրջանը եղել է Սասանյան Պարսկաստանի տիրապետության տակ: Հայերի հոսքը Միջին Ասիա և Ղ. մեծացել է հատկապես XIX դ–ի 2–րդ կեսից, երբ Ռուսաստանը նվաճել է Թուրքեստանը: Ներկայում Ղ.–ում ապրում է մոտ 3 հզ. հայ՝ գլխավորապես Բիշքեկում: 1996–ից Ղ.–ի ազգերի ասամբլեայի շրջանակներում գործում է հայկ. մշակութ. «Կարավան» կազմ–յունը, որին կից գործում են հայոց լեզվի ուսուցման, ազգ. մշակույթի պահպանության կենտրոններ, կիրակնօրյա դպրոց:

ՂՐՂԸԶՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ, հիմնադրվել է 1954–ին Ֆրունզեում (այժմ՝ Բիշքեկ)՝

Ղրղզ ՖԱՆ-ի հիման վրա: Ունի 4 բաժանմունք և 18 ԳՀԻ-ներ:

ՂՐՂԸՋՖԻԼՄ, գեղ. և վավերագր. ֆիլմերի ստուդիա Բիշքեկում: Հիմնադրվել է 1942-ին: Լավագույն ֆիլմերից են՝ «Տոկտոգուլ» (1959), «Տապ» (1963), «Կարմիր խնձոր» (1975), «Սպիտակ շոգենավ» (1976), «Ոսկե աշուն» (1980), «Հետաքննդում» (1989), «Սատանայի կնիքը» (1991), «Մանասի տիեզերքը» (1995), «Սեր լացը Մանկուրտի համար» (2003), «Սահմանը» (2006), «Անհայտ երթուղի» (2008), «Միրահարված գողը» (2009): Կոչվել է Կիևոռեժ. Թոլոմուշ Օկենի անվ., սահմանել՝ ազգ. կինոմրց.՝ «Ակ Իլբիրո»:

ՂՈՒԼ ԱՐՋՈՒՆԻ, Արզունի Նորջուղայեցի (մոտ 1650–մոտ1750), աշուղ: Նոր Ջուղայի աշուղ. դպրոցի հիմնադիրներից (*Ղուլ Էզազի* հետ): 1823-ից Ղ. Ա-ի մասին տեղեկություններ և որոշ երգեր (մեղեդիները չեն պահպանվել) տպագրվել են բանասիր. հանդեսներում և տարբեր ժող-ներում:

ՂՈՒԼ ԷԶԱԶ, Էզազ Նորջուղայեցի (մոտ 1650–1734), աշուղ: Նոր Ջուղայի աշուղ. դպրոցի հիմնադիրներից (*Ղուլ Արզունիի* հետ): 1823-ից Ղ. Է-ի մասին տեղեկություններ և որոշ երգեր (Նոր Ջուղայի բարբառով, պահպանվել է 8 խաղ) տպագրվել են բանասիր. հանդեսներում և տարբեր ժող-ներում: Մեկ ձեռագիր հայտնաբերվել է Մտնդ-ում (№ 5954):

ՂՈՒԼԻԿՅԱՆ Վարազդատ Մակարի (ծ.1921), Փառքի երեք աստիճանի շքանշանակիր (1944, 1945, 1946), ավագ սերժանտ: ՀՄՊ-ին մասնակցել է Թամանյան 89-րդ հայկ. հրաձգ. դիվիզիայի կազմում՝ որպես սակրավորների ջոկի հրամ.: Շքանշանների արժանացել է Հս. Կովկասում Մալգոբեկի համար մղված մարտերում (1942)՝ ականապատված դաշտերը վնասազերծելու, 1945-ի հունվ-ին՝ Օդերի գետանցումն ապահովելու, Բեռլինի Հումբոլդհայն զբոսայգում պարիսպամրությունները պայթեցնելու համար:

ԽՍՀՄ Կարմիր աստղի, ՀՄՊ-ի 1-ին և 2-րդ աստիճանների շքանշաններ:

ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ Անդրանիկ Հայկազի (ծ. 1948), անտառագետ: Կենսբ. գիտ. դ-ր (2009): Աշխ-ները վերաբերում են ՀՀ անտառտնտ-ների և բնության հատուկ պահպանվող տարածքների խնդիրներին: ՌԲՆԳԱ և ԵԲՆԳԱ անդամ (2011):

ՂՈՒԼՂԱՋԱՐՅԱՆ Գուրգեն Ռուբենի (ծ. 1946), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (2004), պրոֆ. (2001): Աշխ-ները վերաբերում են օրթոտրոպ. գլան. թաղանթների սեփ. տատանումների սպեկտրի ուսումնասիրությանը:

«XXI դարի 2000 նշանավոր մտավորականներ» շքանշան (2006, Քեմբրիջ, Անգլիա):

ՂՈՒԼՂԱՋԱՐՅԱՆ Լուսինե Գուրգենի (ծ. 1976), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (2015): Աշխ-ները վերաբերում են առաձգականության տեսության օրթոտրոպ. սալերի և թաղանթների տարած. դինամիկ. խառը եզրային խնդիրների լուծմանը, կառուցվածքների հիմքերի և հիմնատակերի վրա սեյսմիկ ալիքների ազդեցության հարցերին:

ՂՈՒԼՂԱՋԱՐՅԱՆ Կարեն Անդրանիկի (1937–2002), ռադիոէլեկտրոնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1995), պրոֆ. (1997): ՀՀ վաստ. գյուտարար (1989): Աշխ-ները վերաբերում են դիմադրիչ թաղանթներով գերբարձր հաճախ. և կոորդինատ. լուսաէլեկտրոն. սարքերի ստեղծման սկզբունքների և տեսության մշակման հարցերին:

ՂՈՒԼՅԱՄ Համիդ (Ղուլյամով Համիդ Ուբայդուլլայի, 1919–2005), ուզբեկ գրող, թարգմանիչ: Ուզբ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1969): Ուզբեկստանի ժող. գրող (1979): Հեղինակ է «Մայրցամաքները չեն քնում» (1960) բալլադների ժող-ի, «Լուսատու» (գիրք 1, 2, 1958, 1961), «Սոված տափաստան» (1963), «Տաշքենդցիներ» (1967), «Անմահություն» (1977, հայ.՝ 1989) և այլ վեպերի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1980):

ՂՈՒԼՅԱՄ Ղաֆուր (Ղուլյամով Ղաֆուր Ղուլյամի, 1903–1966), ուզբեկ գրող: Ուզբ. ԽՍՀ ԳԱ ակադ. (1943), Ուզբ. ԽՍՀ ժող. բանաստեղծ (1963): Ուզբ. նոր տաղաչափության հիմնադիրը: Հեղինակ է «Կուկան-բատրակ» (1930) պոեմի, «Երգիծական պատմվածքներ» (1931), «Իմ որդին գող է» (1965) պատմվածքների, «Դինամո» (1931), «Արևելքից եմ գալիս» (1943) բանաստեղծությունների ժող-ների, նաև վիպակների: Հայ. հրատարակվել են «Բանաստեղծություններ» (1961) ժող-ը, «Չարաճճին» (1973) վիպակը:

ԽՍՀՄ Պետ. (1946), Լենինյան (1970, հետմահու) մրց-ներ:

ՂՈՒԼՅԱՄՈՎ, Յախյա Ղուլյամի (1908–1977), ուզբեկ հնագետ-պատմաբան: Ուզբ. ԳԱ ակադ. (1966): Ուզբ. ԽՍՀ գիտ. վաստ. գործիչ: ԳԱ պատմության ինստ-ի տնօրեն (1955–59): Աշխ-ները վերաբերում են Միջին Ասիայի հնագույն պատմությանը և հնագիտ-յանը, մասնավորապես՝ ոռոգման պատմության հարցերին:

ՂՈՒԼՅԱՆ Աշոտ Հմայակի, **Բեկոր** (1959–1992), Արցախի հերոս (1999, հետմահու): Արցախյան պատերազմի տարիներին պատրաստել է ինքնաշեն նռնակ, նռնականետ, 16-գծանի կարճափող հրացան ևն: Աչքի է ընկել Բաքվից Քելբաջար հարձակման եկած ռազմ. շարասյան ոչնչացման (1991), Շուշիի ազատագրման (1992) ժամանակ:

ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի, «Ոսկե արծիվ» (1999) շքանշաններ (հետմահու):

ՂՈՒԼՈՅԱՆ Լիպարիտ Տիգրանի (1913–2006), ջերմաէներգետիկ: Տեխ. գիտ. դ-ր (1976), պրոֆ. (1976): Աշխ-ները վերաբերում են սակավաջուր շրջանների համար ջէկերի ցածր ներուժ. համալիրի լավարկման և արդիականացման հարցերին: Մշակել է վառելիքաէներգետիկ պաշարների օգտագործման արդյունավետության գնահատման մեթոդ, ուսումնասիրել բնակլիմ., տնտ. և այլ գործոնների դերը ջերմա- և ջերմասառնամատակարարման սխեմաների ու համակարգերի ընտրության գործում:

ՂՈՒԿԱՍ Ա. ԿԱՐՆԵՑԻ (1722–1799), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1780-ից: 1797-ին խնդրել է Ռուսաստանի Պավել I կայսրին իր հովանավորության տակ վերցնել հայ ժողդ-ին և ճանաչել Սբ Էջմիածնի հոգևոր իշխանությունը Ռուսաստանի հայերի նկատմամբ (խնդրանքը բավարարվել է 1798-ի փետր. 26-ի կայսեր. հրովարտակով): Նրա օրոք նորոգվել է Մայր տաճարը, նկարիչ Հովսեփան *Հովսեփանյանը* նկարազարդել է այն:

ՂՈՒԿԱՍ ԼՈՌԵՑԻ, Ղուկաս Հաղպատեցի (ծ. թ. անհտ–1561), մատենագիր, մանկավարժ, գրիչ: 1513–43-ին դասավանդել է Վաղարշապատի և Սանահինի դպրոցներում, ապա՝ Ծար գվթ-ում: Հայտնի է Ղ. Լ-ու «Քարոզգիրքը» (Մտնդ., ձեռ. № 4355), որը բաղկացած է 40 քարոզից. գրված է միջին հայ-ով և կարևոր սկզբնաղբյուր է միջին հայ-ի ուսումնասիրման համար: Ընդօրինակել է քերական. ձեռնարկ, գրել սաղմոսների մեկնություններ, դավանաբան. երկ:

ՂՈՒԿԱՍ ՎԱՆԱՆԴԵՑԻ, Նուրիջանյան (մոտ 1650-ական թթ-ի սկիզբ–1717-ից հետո), փիլ., թարգմանիչ, տպագրիչ, մշակույթի գործիչ: Օքսֆորդի համալսարանի արվ-ի մագիստրոս (1707): 1690-ին Ամստերդամում օգնել է Մատթեոս, ապա՝ Թովմաս *Վանանդեցիներին* հայկ. տպարանի աշխ-ներում, վերջինիս մահից հետո՝ 1708–17-ին, եղել է տպարանի տնօրենը: Տպագրել է կրոն. բովանդակությամբ գրքեր, ինչպես նաև իր («Բանալի Համատարածի աշխարհացուցին», 1696, «Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ և...», 1699, «Ի ըզբօսանս Հայկազունեաց», 1740) և այլ երկեր: Թարգմանել է Արիստոտելի գործերից:

«ՂՈՒԿԱՍԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ», պատմ. և հաս-քաղ. բովանդակությամբ մատենաշար: Հրատարակվել է Թիֆլիսում 1904–17-ին՝ մեծահարուստ Ավետիս Ղուկասյանի (1837–1902) կտակած գումարներով: Տպագրվել են հիմնականում հայ պատմիչների երկերը:

ՂՈՒԿԱՍՅԱՆ Ազատ Բալասանի (ծ. 1928), անտառագետ: Կենսբ. գիտ. դ-ր (1966), պրոֆ. (1968): ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1986): Անտառ-մանրէաբանության Կրասնոյարսկի դպրոցի հիմնադիրը: Աշխ-ները վերաբերում են բնապահպանության և շրջակա միջավայրի աղտոտման հարցերին: Առաջարկել է «Ինսեկտին» և «Տուվերին» պատրաստուկները, որոնք օգտագործում են անտառ. և գղտ. բույսերի պաշտպ-յան համար:

ՂՈՒԿԱՍՅԱՆ Անահիտ Մխիթարի (ծ. 1946), դերասանուհի: Բագրատ *Հովհաննիսյանի* կինը: 1971-ից՝ ԵՊՀԹ-ի դերասանուհի (Նանար՝ Զ. Խալափյանի «Դպրոցական կատակերգություն», Կեսարիա՝ Օ. Իոսելիանի «Քանի դեռ սայլը շուռ չի եկել», Խորթ մայր՝ Շ. Պեռոյի «Մոխրոտը», ևն): Նկարահանվել է «Աշնան արև» (1977), «Տերը» (1983), «Ոսկի և հող» (1985), «Ապրիլ» (1989), «Որտե՞ղ էիր, մարդ Աստծո» (1993), «30 տարի և 3 ժամ» (2008), «Մեր գյուղը» (2015, վերջին երկուսը՝ հեռուստասերիալ) և այլ ֆիլմերում: ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2010):

ՂՈՒԿԱՍՅԱՆ Անդրանիկ Հովհաննեսի (1905–1982), գրող: 1956–62-ին՝ ՀԳՄ Լենինականի բաժանմունքի նախագահ: Հեղինակ է «Փերի աղջիկը» (1955), «Հայրենի ավանդավեպեր» (1960), «Կյանքի էջեր» (1968), «Հեքիաթներ» (1977) ժող-ների և այլ գործերի:

ՂՈՒԿԱՍՅԱՆ Աբրամ Գրիգորի (1901–1972), թերապևտ: Բժշկ. գիտ. դ-ր (1938), պրոֆ. (1938): ԽՍՀՄ ԲԳԱ թղթ. անդամ (1945): ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): Աշխ-ները վերաբերում են մարսողության օրգանների ախտաբանության, երիկամների, սիրտանոթ. համակարգի հիվանդություններին, թերապիայի պատմության հարցերին:

ՂՈՒԿԱՍՅԱՆ Արկադի Արշավիրի (ծ. 1957), պետ., քաղ. գործիչ: ԼՂՀ նախագահի՝ 1997–2007-ին: Ունի արտակարգ և լիազոր դեսպանի դիվանագիտ. աստիճան: 1992-ի սեպտ-ից՝ ԼՂՀ ՊՊԿ նախագահի խորհրդական, 1993–97-ին՝

ԼՂՀ ԱԳ նախարար: 1993–ից՝ ԱԽ անդամ: Գլխավորել է ԼՂՀ պատվիրակությունը ԵԱՀԿ շրջանակներում անցկացվող բանակցություններում: Բնության և հասյան մասին միջազգ. (1999), Ժողղ-ների հոգևոր միասնության (2000) ԳԱ-ների պատվ. անդամ, Արցախի պետ. համալսարանի պատվ. դ-ր (2003):

ՂՈՒԿԱՍՅԱՆ Արշալույս Սերոբի (1911–2000), գինեգործ: Գղտ. գիտ. դ-ր (1969): Աշխ-ները վերաբերում են Ղազախստանի հվ-ում խաղողի վազի տեղաբաշխման, մասնագիտացման ու սորտաշրջանացման հարցերին:

ՂՈՒԿԱՍՅԱՆ Արտուշ Ապրեսի (ծ. 1958), մեխանիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1996), պրոֆ. (1997): ՀՀ ՄԳԱ անդամ (2002): 2002–10-ին՝ ՀՊՄՀ ռեկտոր, 2006-ից՝ նաև Եվրոպ. բուհերի ռեկտորների միջազգ. խորհրդի անդամ, 2010–13-ին՝ ԲՈՀ նախագահ: 2016-ից՝ Գորիսի պետ. համալսարանի ռեկտոր: Աշխ-ները վերաբերում են մանիպուլյացիոն ռոբոտների նախագծման, կառուցման, դինամիկայի և կառավարման խնդիրներին:

ՀՀ «Անանիա Շիրակացի» մեդալ (2007), ՀՀ վարչապետի հուշամեդալ (2012):

ՂՈՒԿԱՍՅԱՆ Գոհար Բաղդասարի (ծ. 1925), համաճարակաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1971), պրոֆ. (1990): ՀԽՍՀ վաստ. բժիշկ (1968): Աշխ-ները վերաբերում են գրիպի, սալմոնելոզների և աղիք. այլ վարակիչ հիվանդությունների համաճարակաբանության և կանխարգելման, օրգանիզմի անընկալունակության վրա հակաբիոտիկների ազդեցության հարցերին: ՌԲՈԳԱ ՀՄ անդամ (2001):

ՂՈՒԿԱՍՅԱՆ Զվարթ Հովհաննեսի (1911–1980), գրականագետ, գրող: Բանասիր. գիտ. դ-ր (1971): Հեղինակ է «Ժամանակակից սովետահայ վեպը. 1953–63» (1964), «Սովետահայ գրականագիտությունը 1920–30-ական թվականներին» (1981) և այլ աշխ-ների, «Պատմվածքներ» (1958), «Ոտնահետքերը ցանկապատի մոտ» (1974) պատմվածքների ժող-ների:

ՂՈՒԿԱՍՅԱՆ Հովհաննես Արամի (1919–1991), գրող: 1946-ին հայրենադարձել է: Հեղինակ է «Խավարի աշխարհում» (1950) վեպի, «Գարնանային պատմություն» (1955), «Անհանգիստ պատանեկություն» (1959) վիպակների, «Փոքրիկ վրիժառուներ» (գիրք 1, 2, 1950, 1953), «Վիպակներ» (1957), «19 պատմվածք» (1966) ժող-ների, «Դեռ սպասում են» (1969), «Ոսկան Երևանցի» (1962, 2012), «Բոզդան Սալթանով» (գիրք 1, 2, 1980, 1985) և այլ պատմավեպերի, «Րաֆֆի» (2002) կենսագր. վիպերգության:

ՀԳՄ Դ. Դեմիրճյանի անվ. մրց. (1986), ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1979):

ՂՈՒԿԱՍՅԱՆ Ղուկաս Հովհաննեսի (1899–1920), հեղ-կուս. գործիչ: ՌՍԴԲ (բ)Կ անդամ՝ 1917-ից: 1920-ի հունվ-ին ընտրվել է *Արմենկոմի* անդամ: Գործուն մասնակցություն է ունեցել 1920-ի Մայիսյան ապստամբությանը, զոհվել է մարտում:

ՂՈՒԿԱՍՅԱՆ Մարգո Գևորգի (1927–2013), գրող, հրապարակախոս: ՀԽՍՀ վաստ. լրագրող (1986): Հեղինակ է «Բաց նամակ երկու միլիոն հասցեով» (1974), «Նախնիների շառավիղը» (1977), «Մենախոսություն» (1983), «Տեսքդ պահեմ աչքերիս մեջ» (1987), «Ո՞ւր է կղզյանն Սևանա» (1999), «Մի կյանքի պատմություն» (2001), «Վկայություն քսաներորդ դարի» (2005), «Քարակերտ հրաշքներ» (2005), «Անվերնագիր… 1915» (2011), «Գլխավոր աստղի տարին» (2011) հրապարակախոս. նյութերի, պատմվածքների, ակնարկների ժող-ների:

ՀԺՄ «Ոսկե գրիչ» (1974), ՀԳՄ Մ. Նալբանդյանի անվ. (1985) և Գր. ամենամյա (2001) մրց-ներ:

ՂՈՒԿԱՍՅԱՆ Պետրոս Սարգսի (ծ. 1945), ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դ-ր (2000): Ստեղծել է սառը բոցերի կայունացման նոր եղանակ և ցույց տվել, որ սառը բոցը շղթ. պայթյուն է և ուղեկցվում է գերօքսիդային ռադիկալների գերբարձր կոնցենտրացիաներով: Ռեակցիաների ակտիվ կենտրոնների միջոցով հետազոտել է երկֆունկցիոնալ կատալիզի ջրածնի սպիլլովերի (տեղաշարժի) տիրույթը և ստեղծել է այդ շարժընթացների հետազոտման եղանակ:

ՂՈՒԿԱՍՅԱՆ Սևակ Վազգենի (ծ. 1945), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ-ր (2000): Հեղինակ է «Գրական արևելահայերենի և արևմտահայերենի ինչերանգային առանձնահատկությունները» (1990) և այլ աշխ-ների:

ՂՈՒԿԱՍՅԱՆ Վազգեն Սարգսի (ծ. 1949), հայագետ, մատենագետ, պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1995): 1971–74-ին՝ Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքի մտնդ-ի տնօրեն, 1979–88-ին՝ ՄՏԿԿ-ի, 1989–2016-ին՝ Ամերիկայի Արլ. շրջանի Կիլիկյան թեմի ազգ. առաջնորդարանի դիվանապետ: Հիմն. աշխ-ը «Նոր Ջուղայի հայոց թեմի յայտնութիւնը ԺԷ դարում» (անգլ.՝1998, պարսկ.՝ 2015, 2016) երկն է: Ղ. խմբագրել և հրատարակել է Գարեգին Ա-ի «Կրօնական, աստուածաբանական եւ հայագիտական երկեր» (հ. 1–17, 2002–15) և այլ գրքեր, Հին և Նոր Ջուղայի մասին հոդվածներ է տպագրել «Իրանիկա հանրագիտարանում» (հ. 15, 2009): ՄՏԿԿ «Մեսրոպ Մաշտոց» շքանշան (2015), ՀԱԳ «Հակոբ Մեղապարտ» հուշամեդալ (2015):

ՂՈՒԿԱՍՅԱՆ Ֆրիժետա Գուրգենի (ծ. 1930), կինոգետ: Արվեստագիտ. թեկնածու: ՌԴ արվ. վաստ. գործիչ (2002): Հենրիկ *Սարանջյանի* կինը: «Նիկա» կինոակադ-ի անդամ: 1965–2000-ին՝ Լենֆիլմի՝ Առաջին ստեղծագործ. միավորման գլխ. խմբ.: Կազմել և հեղինակել է Ա. Ն. Մոսկվինի, Դ. Կ. Ասանովայի մասին հոդվածների ժող-ը (հ. 1–2):

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1986):

ՂՈՒԿԱՍՅԱՆՑ Հայրապետ (1845–1920), մանկավարժ, հրապարակախոս, հաս. գործիչ, թարգմանիչ: Եղել է Շամախու, Ալեքսանդրապոլի, Թիֆլիսի մի շարք հայկ. դպրոցների, Էջմիածնի Գևորգյան ճեմարանի ուսուցիչ և տեսուչ: 1896-ին ձեռնադրվել է քհն.: Հեղինակ է դպրոց. դասագրքերի, «Բողոքականութիւն Կովկասու հայոց մէջ» (1886) աշխ-յան: Աշխարհաբարի է փոխադրել Եղիշեի «Վարդանի և հայոց պատերազմի մասին» (1891) երկը, թարգմանել Ա. Դիստերվեգի «Հիմնարար դիդակտիկական կանոններ» (1880) աշխ-ը:

ՂՈՒԿԱՍՈՎ Աբրահամ Իվանի (1904–1985), խաղողագործ: Գղտ. գիտ. դ-ր (1979), պրոֆ. (1980): Աշակել է խաղողի վազի ձևավորման և էտի եղանակներ: Հիմնավորել է լայնաշարք բարձրարուն խաղողի վազի մշակության առավելությունը ՌԴ Կրասնոդարի երկրամասում:

ՂՈՒԿԱՍՈՎ (Ղուկասյանց) Աբրահամ Հովսեփի (1872–1969): Բնական և փիլ. գիտ. դ-ր: Պավել *Ղուկասովի* եղբայրը: 1899-ից՝ Եվրոպայում «Կասպիական ընկերության» նախագահ: ԱՀՊ-ի տարինեբին Պետրոգրադում ղեկավարել է «Պելլա» գործարանը: Հոկտ. հեղ-յունից (1917) հետո տարագրվել է Փարիզ, հիմնադրել շին. ընկ., հրատարակել «Վերածնունդ» լրագիրը (1925–40, 1949–69-ին՝ ամսագիր): 1926-ից՝ Ռուս. ազգ. միավորման վարչության նախագահ: Եղբայրների հետ հիմնադրել է «Ղուկասյանց եղբայրներ» հիմնադրամը:

ՂՈՒԿԱՍՈՎ Նիկոլայ Ավանեսի (ծ. 1928), հանք. գործի մասնագետ, հիդրավլիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1971), պրոֆ. (1973): Ուկրաինայի գիտ. և տեխ. վաստ. գործիչ: Մոսկվայի երկրաբանահետախուզ. ակադ-ի պրոֆ.: ՌԻՍԳԱ թղթ. անդամ: Աշխ-ները վերաբերում են գազ. և գազակոնդեսատային հանքավայրերի հորատման ու շահագործման հարցերին:

ՂՈՒԿԱՍՈՎ (Ղուկասյանց) Պավել Հովսեփի (Օսեփի, 1858–1932), ճարտարագետ, խոշոր նավթարդյունաբերող Բաքվում: Աբրահամ *Ղուկասովի* եղբայրը: Եղբայրների հետ ղեկավարել է նավթ. մի շարք ընկ-ներ և վարչություններ: 1890–1906-ին և 1915–17-ին՝ Բաքվի նավթարդյունաբերողների համագումարի նախագահ, 1906–12-ին՝ Պետ. խորհրդի անդամ, 1916-ից՝ Ռուս. առևտրաարդ. բանկ. խորհրդի նախագահ: 1920-ից տարագրվել է:

ՂՈՒՆԿԻԱՆՈՍ ԿԱՐՆԵՑԻ (1781/86–1841), բանաստեղծ, երգիչ, աշուղ: Երգերի հիմն. թեման մարդու ներաշխարհն է, պանդխտությունը, գաղթը, կորուսյալ հայրենիքի ողբերգությունը («Ղունկիանոսի ընծան», հրտ.՝ 1995): Գրել է նաև տաճկ., արաբ., պարսկ.: Ախալքալաքի Վարևան գ-ում Ղ. Կ-ու գերեզմանի վրա կառուցված մատուռը դարձել է ուխտատեղի:

ՂՈՒՇՉՅԱՆ Համազ Բոգդանի (1939–2008), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (1988), պրոֆ. (1989): Աշխ-ները վերաբերում են արտադր-յան արդյունավետության, միջճյուղ. հաշվեկշռի, տնտհաշվարկային հարաբերությունների կատարելագործման, տնտ-յան մակրոտնտ. կարգավորման հարցերին:

ՂՈՒՇՉՅԱՆ Հայկ Սմբատի (1923–2000), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (1992), պրոֆ. (1995): Աշխ-ները վերաբերում են ՀՀ բնակլիմ. պայմաններում կերարտադրյան ավելացման, կերերի վերամշակման, խոտհարքների և արոտավայրերի օգտագործման տնտ. արդյունավետության բարձրացման հարցերին:

ՂՈՒՐԱՆ (արաբ.՝ դուր ան – բարձրաձայն ընթերցվածք, արտասանություն), մահմեդականության սուրբ գիրքը: Մուհամմեդի քարոզների հավաքածուն է, որը պարունակում է կրոնադավանաբան., ծիս. և կենցաղ. պատվիրաններ, իրավ. դրույթներ, խրատներ, առակներ, աղոթքներ, անեծքներ ևն: Պահպանված ամենավաղ գրվածքները վերագրվում են VII–VIII դդ-ին:

ՂՓՉԱՂԵՐԵՆ, կումաներեն, պոլովցիների (կումանների) լեզուն: Պատկանում է թյուրք. լեզվաընտանիքի դփչաղյան խմբին: Հնագույն հուշարձաններն ավանդված են XI դ-ից (խոշորագույնը՝ «Codex Cumanicus», XIII դ., հրտ.՝ 1828, 1880): Ստեղծվել է հայատառ Ղ. ձեռագիր և տպագիր մեծածավալ գրկ.:

ՂՓՉԱՂՆԵՐ, պոլովցիներ, կումաններ, միջնադար. թյուրքալեզու ժողդ: X դ–ում զբաղեցրել են Հս–արմ. Ղազախստանի տարածքը, դարի կեսին տարածվել են Հս. Կովկասի և Հս. Մերձևնծով. տափաստաններ՝ Դանուբից մինչև Տյան Շան տարածքը, XI–XIV դդ–ում կոչվել է Դեշտի Ղփչաղ (Ղփչաղների հարթավայր): Ապրել են ցեղ. միություններով՝ խանի գլխավորությամբ: 1064–ին, երբ սելջուկները գրավել են *Անին*, մեծ թվով հայեր գաղթել են Կասպից և Սև ծովերի ափերը և քաղ. կախվածության մեջ ընկել Ղ–ից: Ղ. չունեին գիր, և *ղփչաղերենը* յուրացրած հայերն այդ լեզվով որևէ բան գրելու համար օգտագործել են հայ. տառերը. այսպես է առաջացել հայատառ ղփչաղ–ը: XII դ–ի սկզբին Ռուսիայի իշխանների հաղթ. արշավանքներից 40 հզ. Ղ. փախել են Վրաստան և մասնակցել սելջուկների դեմ կռիվներին: 1223–ին Կալկայի ճակատամարտում պարտվելով մոնղոլներին՝ արլ. Ղ. խառնվել են նրանց բանակի հետ՝ հետագայում կազմելով *Ոսկե Հորդայի* բնակչության հիմն. մասը: Ղ–ի արմ. հատվածը *Բաթու խանի* արշավանքից հետո անցել է Հունգարիա, Բուլղարիա, Եգիպտոս և ձուլվել տեղի ժողդ–ների հետ:



Ճ, հայ. այբուբենի 19–րդ տառը, անվանումը՝ ճե: Ունի ***գրչագիր***, ***երկաթագիր***, ***բոլորգիր***, ***շղագիր***, ***նուրբգիր*** տառատեսակները: Հայ–ի առաջնալեզվային լեզվատամնային պայթաշփական խուլ բաղաձայն հնչյուն (հնչույթ) է: Թվային արժեքը՝ 100:

ՃԱԲՈՒԿԻԱՆԻ Վախթանգ Միխայիլի (1910–1992), բալետի վրացի արտիստ, դերասան, բալետմայստեր: ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1939), ՌԽՖՍՀ արվ. գործիչ (1940), ՎԽՍՀ (1943), ԽՍՀՄ (1950) ժող. արտիստ: Սոց աշխ. հերոս (1990): 1929–41–ին՝ Լենինգրադի ՕԲԹ–ի մենապարող (Բազիլ՝ Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ»), Ալբերտ՝ Ա. Ադանի «Ժիզել», ևն): 1941–ից՝ Թբիլիսիի Զ. Փալիաշվիլու անվ. ՕԲԹ–ում, ապա՝ Շ. Ռուսթավելու անվ. թատեր. ինստ–ում: Բեմադրել է Ա. Բալանչիվաձեի «Լեռների սիրտը» (1938), Ա. Ա. Կրեյնի «Լաուրենսիա» (1939) և այլ բալետներ:

ԽՍՀՄ Պետ. (1941, 1948, 1951) և Լենինյան (1958) մրց–ներ:

ՃԱԳԱՐ (Oryctolagus cuniculus), նապաստակների ընտանիքի կաթնասուն կենդանի: Մարմնի երկ.՝ 35–44 *սմ*: Հայրենիքը Հվ. և Կենտր. Եվրոպան է, Հս. Աֆրիկան: Տարվել է Մեծ Բրիտանիա, Նոր Զելանդիա, Ավստրալիա, Ամերիկա, Ուկրաինայի հվ–արմ.: Որսակենդանի է: Բազմաքանակ վայրերում վնաս է պատճառում գղտ–յանը: Ընտանի Ճ–ի ցեղի նախահայրն է: Բազմացնում են մսի, աղվամազի, մորթու համար: Հայտնի է ընտանի Ճ–ի մոտ 60 ցեղ, այդ թվում՝ հայկ. մառդերը, որն ստացվել է Հայաստանում՝ Մալխաս Բագրատունու ղեկավարությամբ:

ՃԱԳԱՐԱՄԱՆՆԵՐ (Dipodidae), կրծողների կարգի կաթնասունների ընտանիք: Մարմնի երկ.՝ 5–26, պոչինը՝ 7–30 *սմ*: Հայտնի է 10–15 ցեղի մոտ 30 տեսակ՝ տարածված Եվրասիայում, Հս. Աֆրիկայում և Հս. Ամերիկայում, ՀՀ–ում՝ 2՝ փոքր և փոքրասիական Ճ.: Ակտիվ են մթնշաղին և գիշերը, ձմռանը քուն են մտնում: Սնվում են սոխուկներով, պալարներով, պտուղներով: Արջամկնային ճագարամուկը կամ գետնանապաստակը կարող է մեծ վնաս հասցնել բոստան. (ձմերուկ, սեխ), հացահատիկ. մշակաբույսերին, արևածաղկի և ոլոռի ցանքերին: Որոշ տեսակներ հիվանդությունների հարուցիչների տարածողներ են:

ՃԱԽԱՐԱԿ, 1. ակոսավոր անվի տեսքով դետալ, որի վրայով գցվում է շղթա, ճոպան, պարան: Օգտագործվում է մեքենաներում և մեխանիզմներում՝ ուժի գործողության ուղղությունը փոխելու (անշարժ Ճ.), ուժի կամ արագության շահում ստանալու (շարժ. Ճ.) համար (նկ.): 2. Թել մանելու գործիք: Բաղկացած է թեք ոտքերով պատվանդանի վրա ամրացված առանցքակալից, դրա միջով անցնող և 2 կողմերում դրված ութաձև տախտակներով թևերից ու թելը փաթաթող իլիկից:

ՃԱԽԱՐԱԿԱՅԻՆ ՆՅԱՐԴ (nervus trochlearis), գլխուղեղային 4–րդ զույգ նյարդը: Հիմնականում սոմատիկ շարժիչ է. նյարդավորում է ակնագնդի վերին թեք մկանը: Ախտահարումն արտահայտվում է վերին թեք մկանի լուծանքով և դժվարացնում են ակնագնդի շարժումները:

ՃԱԽՐԱԲԱԶԵ (Falco ructicolus), բազեների ընտանիքի գիշատիչ թռչուն: Երկ.՝ 50–60 *սմ*: Ապրում է Ամերիկայի և Եվրասիայի տունդրաներում և անտառատունդրաներում: Հիմն. սնունդը թռչուններն են: Հազվադեպ է հանդիպում. պահպանվում է:

ՃԱԽՐԱԹԻՒ, օդից ծանր, առանց շարժիչի թռչող ապարատ, որը մթն–ում օդի վերընթաց հոսանքների առկայությամբ կարող է թռչել առանց բարձր–յունը կորցնելու կամ նույնիսկ կարող է վեր բարձրանալ (սավառնել):

ՃԱԽՐՈՒԿ (Cehttasia grigaria), քարադրանմանների ընտանիքի թռչուն: Երկ.՝ մոտ 30 *սմ*: Բնադրում է Վոլգայի աջափնյակից մինչև Օբի և Իրտիշի վերին սահանքները: Առավել տարածված է Կենտր. Ղազախստանում: Հազվագյուտ տեսակ է. պահպանվում է:

ՃԱԿԱՏԱԳԻՐ, առօրյա գիտակցության մեջ դեպքերի և իրադարձությունների ոչ բանական և անըմբռնելի կանխորոշվածությունն առասպելաբանության և իռացիոնալիստ. փիլ. համակարգերում: Անտիկ դարաշրջանում ընկալվել է իբրև հաջողություն և պատահականություն (հուն.՝ Տյուխե), որպես համընդգրկուն նախասահմանվածություն (ֆատում): Քրիստոնեությունը Ճ–ի գաղափարին հակադրել է աստված. հայտնության հավատը: XIX դ–ի վերջին «Ճ.» հասկացությունը տարածվել է կյանքի փիլ–յան մեջ: Առօրյայում հաճախ նշանակում է կյանքի ուղի, բախտ, իրադարձությունների ընթացք:

ՃԱԿԱՏԱԳՐԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, ֆատալիզմ (լատ.՝ fatalis – ճակատագրական, < fatum – ճակատագիր, բախտ), իրադարձությունների անդառնալի նախասահմանվածության մասին պատկերացում, հավատ դիմազուրկ բախտի (անտիկ *ատոհցիզմ*), անփոփոխ աստված. նախասահմանվածության (հատկապես ընորոշ է մահմեդականությանը) նկատմամբ:

ՃԱԿԱՏԱՄԱՐՏ, պատերազմող կողմերի գլխ. ուժերի վճռական բախում: Անցյալում ռազմ. գործողությունները տեղի են ունեցել սահմանափակ տարածքներում, և հաճախ մեկ Ճ–ի ելքից էր կախված ոչ միայն բանակի, այլև պետության ճակատագիրը (օր.՝ ***Ավարայրի ճակատամարտ 451, Կուլիկովոյի ճակատամարտ 1380*** ևն): Նոր ժամանակներում «Ճ.» հասկացությունն օգտագործվում է մի շարք մարտերի ու ռազմ. բախումների հավաքական իմաստով:

ՃԱԿԱՏԱՆՈՑ, **ճակտնոց**, ամուսնացած կանանց գլխազարդի մաս ավանդ. տարազի լրակազմում՝ մինչև XX դ–ի սկիզբը (ապա հանդիպում է Արցախի, Զանգեզուրի տարեց կանանց հանդերձանքում): Ճ–ները թավշապատ էին, ասեղնակար (բուս. պատկերներ)՝ զարդարված գունավոր, արծաթե, ոսկե թելերով, նաև ծաղկաձև և տերևաձև ոսկե թերթիկներով, մարգարիտներով, գունավոր ակներով, հաճախ՝ ոսկե և արծաթե դրամաշարով (Վասպուրականում՝ արծաթե զուգաթելի դրվագումով):

ՃԱԿԱՏՔ, գվո Այրարատ նհնգ–ում՝ Հայկ. Պար լ–շղթայի և Երասխ գետի միջև՝ վերջինի Վարդամարգ և Ագարակ վտակների ավազանում: Արլ. Հայաստանի՝ Ռուսաստանին միանալուց հետո Մասյացոտնի արլ. մասի հետ կազմել է ***Մուրմալու*** գվո–ը:


ՃԱԿՆԴԵՂ (Beta), **բազուկ, տակ**, թելուկազգիների ընտանիքի միամյա, երկամյա և բազմամյա խոտաբույսերի ցեղ: Բանջարային, կերային և շաքարատու մշակաբույս է: Հայտնի է 15 տեսակ. տարածման արեալն արլ–ում ընդգրկում է Հնդկաստանը, արմ–ում՝ Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Սկանդ. երկրները: ՀՀ–ում հայտնի է 5 տեսակ: Վայրած տեսակներ հանդիպում են գրեթե բոլոր մարզերում:

ՃԱԿՆԴԵՂԻ ԵՐԿԱՐԱԿՆՃԻԹՆԵՐ, երկարակնճիթների ընտանիքի բզեզներ, շաքարի ***ճակնդեղի*** վնասատուներ են (հատկապես՝ սովոր., արլ., մոխրագույն և սև տեսակները) Եվրասիայում: Մնվում են շաքիլային տերևներով, երիտասարդ ցողուններով, թրթուրները՝ արմատներով:

ՃԱԿՆԴԵՂԻ ՄԼՈՒԿ, քոռուկների ընտանիքի միջատ, ***ճակնդեղի*** վնասատու: Սևամոխրագույն է: Երկ.՝ 3–5 *մմ*: Մնվում է բույսերի հյութով: Մի շարք վիրուս. հիվանդությունների հարուցիչների փոխանցող է:

ՃԱԿՆԴԵՂԻ ՏԵՐԵՎԱԼՎԻՃ, իսկական լվիճների ընտանիքի միջատ, ***ճակնդեղի*** վնասատու: Սև է՝ կապտավուն երանգով: Երկ.՝ մոտ 2 *մմ*: Մնվում է տերևների հյութով: Ճակնդեղի վիրուս. հիվանդության փոխանցող է:

ՃԱԿՏՈՆ, **ֆրոնտոն** (ֆրանս.՝ fronton), շենքի, պորտիկի, սյունաշարի ճակատը պսակող, քիվով և երկլանջ տանիքով երիզված եռնակյունաձև ավարտամասը:



ՃԱԿՏՈՆԱԶԱՐԴ, **ակրոտեր** (հուն.՝ acroteria – գագաթ), քանդակ. հարդարանք (արձան, ***արմավիկ***) ճարտ. դաս. օրդերով կառուցված շենքի ***ճակտոնի*** անկյուններում:

ՃԱԿՏՈՆԱՊԱՏ, **տիմպան** (լատ.՝ timpanum), 1. ***ճակտոնի*** եռանկյունաձև հարթությունը: 2. Դռան կամ լուսամուտի վերևի կիսաշրջանաձև, եռանկյունաձև կամ պայտաձև պատը (հաճախ՝ քանդակազարդ, Ամաղուի Նորավանք, Սպիտակավոր Սբ Աստվածածին, Հովհաննես Կարապետ վանքեր, Արենիի XIII–XIV դդ–ի եկեղեցիների ճ–երը): Տես նաև ***Բարավոր***:

ՃԱԿՔ, գվո *Տայք* նհնգ–ում: Որոշ ուսումնասիրողներ տեղադրում են Բոխա և Ճորոխ գետերի եռանկյունում՝ Սամիկոնյաններին պատկանող Իշխանաց գ–ի, Էրախանի և Տայոց քար ամրոցների շրջանում: Տարածքը հետագայում կոչվել է Իշխանանիստ ձոր:

ՃԱՀԻՃ, ավելցուկ. խոնավությամբ, խոնավասեր բույսերով ծածկված ցամաքի տեղամաս: Առաջանում է ջրավազանների բուսակալման կամ գետի վրա ջրերի լճացման հետևանքով: Ընդհ. տարածքը՝ 350 մլն *հա*: Առավել տարածված է Հս. կիսագնդի բարեխառն գոտու անտառ. գոնայում, ՀՀ–ում՝ Տաշիրի, Մարտունու և Վարդենիսի տարածաշրջաններում:

ՃԱՀՃԱԳԱՋ, առաջանում է լճացած ջրավազանների հատակին: Հիմն. բաղադրիչը մեթանն է, որը պարունակում է չնչին քանակությամբ ածխաթթու գազ և ազոտ:

ՃԱՀՃԱՆԳԱՎԻՆՋ (Lycopus), խուլեղինջազգիների (շրթնածաղկավորներ) ընտանիքի բազմամյա, կոճղարմատավոր խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 14 տեսակ, ՀՀ–ում՝ 2՝ գրեթե բոլոր մարզերում: Մեղրատու է:

ՃԱՀՃԱԽՈՏ (Eleocharis), բողկազգիների ընտանիքի բազմամյա, հազվադեպ՝ միամյա կոճղարմատավոր խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 200 տեսակ, ՀՀ–ում՝ 6՝ գրեթե բոլոր մարզերում: Տերևազուրկ է: Ծաղկում է մայիսի վերջին կամ հունիսի սկզբին: Պտուղը ընկուզիկ է:

ՃԱՀՃԱԿՈՒՊԸ (Myocastor coipus), **նուտրիա, կոիպու**, կրծողների կարգի կաթնասուն կենդանի: Կիսաջր. կենսակերպի խոշոր կրծող է, նման է մեծ առնետի: Մարմնի երկ.՝ 60, պոչինը՝ 45 *սմ*: Բնական արեալը Հվ. Ամերիկայի հվ. մասն է: Կլիմայավարժեցվել է Եվրոպայի հվ–արմ–ում, Կովկասում, Միջին Ասիայում: Ապրում է քաղցրահամ, չսառչող ջրամբարների ափերին, լավ լողում է և սուզվում: Բազմացման և մորթեղենի արդյունագործության կենդանի է: ՀՀ–ում ճ–երի կլիմայավարժեցման աշխ–ներն սկսվել են Մև ջուր գետի ստորին ավազանում, Ախնա լճում, Արաքսի և նրա վտակների ստորին ավազանների բուսականությամբ հարուստ տեղանքներում:

ՃԱՀՃԱՅԻՆ ԵՂԵԳՆԱԹՈՒՉՆԱԿ (Acrochefalus palustris), շահիրիկների ընտանիքի թռչուն: Բնադրող–չվող է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 13, թևերի բացվածքը՝ 18–21 *սմ*, կ. գ.՝ 10–12 *գ*: Երգը մեղեդային է՝ նմանակումներով: Բնակվում է փարթամ բուսականությամբ տարածքներում, ձմռանը՝ եղեգնուտներում: Թվաքանակը նվազել է, համակեցության լայն օջախներ չի առաջացնում:

ՃԱՀՃԱՅԻՆ ԿՐԻԱ (Emis orbicularis), **սովորական կրիա, աչիկավոր կրիա**, ջր. կրիաների ընտանիքի կենդանի: Զրահի երկ–յունը փոխվում է տարիքի հետ (2,2–29 *սմ*): Մնվում է որդերով, հոդվածոտանիներով, մանր ողնաշարավորներով, լեշերով, նաև ջր. բուսականությամբ: Օգտագործվում է ԳՀ նպատակներով: Միսն ու ձուն ուտելի են: Գրանցված է ՌՊՄՄ Կարմիր գրքում:

ՃԱՀՃԱՅԻՆ ՄԿՆԱՃՈՒՌԱԿ (Circus aeruginosus), ***ճուռակների*** ընտանիքի գիշատիչ թռչուն: Նստակյաց է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 48–56, թևերի բացվածքը՝ 115–130 *սմ*, կ. գ.՝ 500–750 *գ*: Որսը որոնում է ցածր, դանդաղ թռիչքի ընթացքում: Բնակվում է լճերի հարակից ճահճուտներում: Մնվում է թռչուններով, միջատներով, ջրառնետներով:

ՃԱՀՃԱՆՈՒՇԻ, ճահճանոճազգիների ընտանիքի փշատերև ծառերի ցեղ: Հայտնի է 2 տեսակ՝ Հս. Ամերիկայի հվ–արլ–ում: Եվրոպ. երկրներում, նաև ՌԴ–ում (Կովկաս), Միջին Ասիայում մշակվում է որպես գեղազարդիչ: Արժեքավոր է ճ–ու բնափայտը, որն օգտագործվում է կահույքի արդ–յան մեջ:

ՃԱՀՈՒԿ, **Զահուկ**, գվո *Սյունիք* նհնգ–ում՝ Նախճավան գետի Ճահուկ և Շահապոնք վտակների ավազաններում: Արշակունիների օրոք (I–V դդ.)՝ Շահապունիք իշխան. տան տիրույթը: X դ–ում մտել է Սյունյաց գահերեց իշխան Սմբատի տիրույթների մեջ: XVI–XVIII դդ–ում եղել է Նախիջևանի խանության կազմում, կոչվել է Զահրի: XIX դ–ի 2–րդ կեսից մտել է Երևանի նհնգ–ի Նախիջևան գվո–ի մեջ: Նախիջևանի կազմում 1921–ին տրվել է Ադրբ. ԽՍՀ–ին (համապատասխանում է Նախիջևանի Շահբուզի շրջանին):

ՃԱՂԱՏԱՄԱՐ, **Ձիթհանից սար**, լ–գագաթ Փամբակի լ–շղթայում՝ ՀՀ Լոռու և Կոտայքի մարզերի սահմանագլխին: Բարձր.՝ 3094 *մ*: Կան ժայռ. մերկացումներ: Լանդշաֆտը լ–մարգագետնային է:

ՃՂՂԱՐՅԱՆ Անդրանիկ Զումշուդի (1916–1985), վիրաբույժ, մարդաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1957), պրոֆ. (1960): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1963): Աշխ–ները վերաբերում են սրտի արատների վիրաբուժության, առրտայի բնածին նեղացման, սրտի պսակային անոթների անբավարարության հարցերին: 1958–ին կատարել է սրտի առաջին վիրահատությունը Հայաստանում: Ճ. մշակել է դեմքի պլաստիկ վերականգնման մեթոդ: Վերականգնել է Պետրոս Դուրյանի (1972), խուռիական (բրոնզիդար.), ուրարտ. և Շենգավիթում 6 հզ. տարի առաջ ապրած բնիկների դեմքեր: ՀԽՍՀ ԳԱ Հնագիտ–յան և ազգագրության թանգարանում (Սարդարապատ) 1970–ին հիմնել է բրոնզիդար. մարդկանց գանգերի հիման վրա վերականգնված դիմաքանդակների պատկերասրահ:

Միջազգ. Մեծ (Բրյուսել, 1959) և ԽՍՀՄ ԲԳԱ Ն. Ն. Բուրդենկոյի անվ. (1961) մրց–ներ:

ՃԱՃԱՆԶ–ԴԱՍՏԱԿԱՅԻՆ ՀՈԴ (articulatio radiocarpea), մարդու նախաբազուկը ձեռքի (ձեռնաթաթի) հետ միացնող շարժուն, բարդ հոդ. կազմված է ճաճանչոսկրից և դաստակի մոտակա շարքի առաջին 3 ոսկրերից: Զվաձև հոդ է. լայնական առանցքի շուրջ կատարում է ծալում և տարածում, նետաձիգի շուրջ՝ զատում, առբերում: Հոդում կատարվում է նաև շրջանաձև շարժում, որի ժամանակ մատների ծայրերը շրջան են գծում:

ՃԱՄԱՅԿԱ (Jamaica), պետություն Լատ. Ամերիկայում՝ Վեստ Ինդիայում՝ համանուն և հարակից մանր կղզիների վրա: Տարածքը՝ շուրջ 11,5 հզ. *կմ²*, բն.՝ 2,9 մլն (2014): Մայրաքաղաքը՝ ***Քինգսթոն***: Պետ. լեզուն՝ անգլ.: Կառավարման ձևը՝ միապետ.: Պետության գլուխը Մեծ Բրիտանիայի թագուհին է՝ ներկայացված գեն. նահանգապետով: Օրենսդիր մարմինը երկպալատ խորհրդարանն է: Բաժանված է 3 վարչ. կոմսությունների՝ 14 օկրուգով: Հավատացյալները հիմնականում քրիստոնյա են՝ բողոքական, կաթոլիկ: Անդամակցում է ՄԱԿ–ին, Ազգերի համագործակցությանը, Կարիբյան ընկերակցությանը ևն: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 8,2 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է կավահող, բոքսիդներ, շաքար, ռոմ, սուրճ ևն, ներմուծում պարենամթերք, սպառող. ապրանքներ, վառելանյութ, տրանսպորտ. միջոցներ, շինանյութ: Դրամ. միավորը՝ Ճամայկայի դոլար:

Հսում կղզում ապրել են հնդկացինները: 1494–ին կղզին հայտնաբերել է Ք. Կոլումբոսը և անվանել Սանտյագո: Հետագայում հնդկացիները կղզուն տվել են Հայմակա (Աղբյուրների կղզի) անվանումը, որը վերափոխվել է Ճ–ի: 1494–1670–ին

եղել է Իսպանիայի տիրույթ, որի ընթացքում հիմնովին բնաջնջվել են հնդկացիները: 1513–ից Աֆրիկայից բերվել են սևամորթ ստրուկներ՝ տնկարկներում աշխատելու համար: 1670–ին գրավել է Մեծ Բրիտանիան: Անկախացել է 1962–ին:

ՃԱՄԱՅԿԱՅԻՆԵՐ, կրեոլյան ժողղ, Ճամայկայի հիմն. բնակչությունը (2,5 մլն, 2010): Ապրում են նաև ԱՄՆ–ում (689 հզ., 2000) և այլ երկրներում: Հիմնականում սևամորթ և մուլատ են: Խոսում են ***կրեոլ լեզուներով*** (անգլ. հիմքի վրա): Հավատացյալները հիմնականում բողոքական են (անգլիկան և ավետարանական), կան նաև կաթոլիկներ:

ՃԱՅԵՐ (Phyrrocoracidae), ճնճղուկանմանների կարգի ագռավների ընտանիքի թռչուններ: ՀՀ–ում հանդիպում է 3 տեսակ՝ ալպ., կարմրակտուց և սովոր.: Մարմնի երկ.՝ 33–37, թևերի բացվածքը՝ 73–90 *սմ*, կ. զ.՝ 240–420 *գ*: Փետրածածկը սև է:

ՃԱՅԹԵՑՆՈՂ ՔՈՒՂ, ճայթյունը *ճայթիչից* պայթուցիկ լիցքերին հաղորդելու քուղ: Ճ. ք–ի միջուկը հյուսվածապատվածքի մեջ գտնվող բարձրաճշրտող պն է (տեն, հեքսոգեն, օկտոգեն): Ճ. ք. երբեմն օգտագործում են որպես ինքնուրույն լիցք:

ՃԱՅԹԻՉ, 1. դյուրությամբ բռնկվող պայթուցիկ նյութ, որն օգտագործում են պայթուցիկի հիմն. լիցքում *ճայթյուն* հարուցելու համար: Սովորաբար օգտագործում են հիմն. պայթուցիկ նյութերից սկզբն. իմպուլսի նկատմամբ ավելի զգայուն նյութեր: 2. Պայթուցիկ նյութերի հիմն. լիցքի պայթյունը հարուցող հրապատիճ՝ բռնկիչ արկերում, ականներում, ավիառումբերում են: Ըստ պայթյունի հարուցման եղանակի՝ լինում են հրային, քիմ., էլ. Ճ–ներ:

ՃԱՅԹՅՈՒՆ, **դետոնացիա** (ֆրանս.՝ détoner – պայթել), 1. հարվածային ալիքի հարուցած քիմ. փոխարկման արագ ջերմանջատիչ շարժընթաց, որը տարածվում է ձայնի արագությունից մեծ հաստատուն արագությամբ (մինչև 9 *կմ/վ*): 2. Ներքին այրման շարժիչներում խառնուրդի արագ (պայթյունի մոտ արագությամբ) այրման շարժընթաց՝ շարժիչի կառուցվածքին կամ աշխ–ի ռեժիմին վառելանյութի անհամապատասխանության դեպքում. ուղեկցվում է շարժիչի վրա վնասակար ազդեցությամբ: Ճ–ի նկատմամբ վառելանյութերի կայունությունը մեծացնում են դրանց հակաճայթիչներ ավելացնելով:

ՃԱՆԱՉՅԱՆ Մեսրոպ (Պետրոս) Գևորգի (1908–1974), գրականագետ, բանաստեղծ, թարգմանիչ, խմբ.: ՎնտՄՄ անդամ (1931–ից): 1939–42–ին՝ Մուրատ–Ռափայելյան վարժարանի տնօրեն, 1942–51, 1954–56 և 1971–74–ին՝ *«Բազմավէպ»*, 1969–71–ին՝ *«Հայ ընտանիք»* պարբ–ների խմբ.: Հեղինակ է «Պատմութիւն արդի հայ գրականութեան» (հ. 1, 1953), «Լորդ Բայրընը Սր Ղազարում» (ֆրանս., 1960), «Ս. Ներսէս Շնորհալիի շարականները» (հրտ.՝ 1975) և այլ աշխ–ների, «Հոգետաւիղ» (1954), «Մեսրոպական» (1963), «Փշրուած քնար» (1973) և այլ բանաստեղծությունների ժող–ների: Կազմել է «Ծաղկաքաղ արդի հայ գրականութեան» (հ. 1, 2, 1957, 1960) հատընտիրը, «Հայկական մանրանկարչութիւն» (1969) ալբոմը: Իտալ. է թարգմանել հայ բանաստեղծների գործերից («Արդի հայ բանաստեղծություն», 1963):

ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆ, իրականության արտացոլման ու վերարտադրման գործընթացը մարդկային մտածողության մեջ, որն անխզելիորեն կապված է գործնականի հետ: Ճ–յան ընթացքում մարդը ձեռք է բերում գիտելիքներ իրական երևույթների մասին, գիտակցում իրեն շրջապատող աշխարհը: Ճ–յան մեջ կարևոր են զգայությունը, ընկալումը, մտապատկերը, երևակայությունն ու ինտուիցիան:

ՃԱՆԱՉՈՒՄ, 1. **պետություն**, միջազգ., դիվանագիտ. ակտ, որով ճանաչված պետությունները հայտարարում են նոր պետության կամ նոր կառ–յան Ճ–ման մասին: Տարբերում են Ճ–ման «դե ֆակտո» և «դե յուրե» ձևերը: 2. **Քրեական դատավարությունում**, քննչ. գործողություն, որի նպատակը վկային (տուժողին, կասկածյալին, մեղադրյալին) հնարավորություն տալն է ներկայացվող անձանց (իրերի) մեջ հայտնաբերելու այն օբյեկտը, որը նա տեսել է քննությանը հետաքրքրող իրադրության կապակցությամբ: Անձը ներկայացվում է Ճ–ման նույն սեռի, իսկ հնարավորության դեպքում՝ ճանաչվողին արտաքին հատկանիշներով նման առնվազն 3 անձանց հետ (դիակը ճանաչելիս այս կանոնը չի կիրառվում): Ճ. կատարվում է ընթերականների ներկայությամբ, այդ մասին կազմվում է արձանագրություն, որը դասվում է ապացույցների շարքը:

ՃԱՆԱՊԱՐՀ «ՎԱՐՅԱԳՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՀՈՒՅՆԵՐ», հին ջր., առևտր. ճանապարհ Բալթիկ ծովից մինչև Սև ծով, որով IX–XII դդ–ում Ռուսիան և Հս. Եվրոպան առևտուր էին անում Բյուզանդիայի հետ: Ճանապարհը ձգվում էր Բալթիկ ծովից Նևա գետով, Լադոգա լճով, Վոլխով գետով, Իլմեն լճով, Լովատ, Արմ. Դվինա և Դնեպր գետերով մինչև Սև ծով: Այս ճանապարհին են եղել Մեծ Նովգորոդ, Սմոլենսկ, Կիև և այլ ք–ներ:

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ, որոշակի ձևի, չափի և գույնի պատկերներ, որոնք տեղադրում են ավտոճանապարհներին և քաղաքի փողոցներում՝ վարորդին ու հետիոտնին ճանապարհի վտանգավոր հատվածների մասին զգուշացնելու, նաև ընդունված սահմանափակումների կամ երթևեկության պայմանների այլ առանձնահատկությունների մասին տեղեկացնելու համար: Լինում են **նախազգուշացնող, առավելության, արգելող և տեղեկատվական–թելադրող** նշաններ:

ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ, ավտոճանապարհների կառուցման, պահպանման և նորոգման, նաև երկթղ., քաղաքաց., արդ., հիդրոտեխ. կառույցների և օդանավակայանների շին–յուն–ներում համալիր աշխ–ների համար օգտագործվող մեքենաներ: Լինում են ինքնագնաց և քարշարկվող (տրակտորով, ավտոմեքենայով և քարշիչներով)՝ արմատահանիչներ, փխրիչներ, էքսկավատորներ, կեռաշերեփներ, գլորններ ևն:

ՃԱՆԱՊԱՐՀԻ ՕԳՏԻԿԱԿԱՆ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆ, այն հեռ–յունը, որը լույսը կանցներ վակուումում՝ տվյալ միջավայրում անցած ժամանակում: Համասեռ միջավայրում հավասար է լույսի ճառագայթի ճանապարհի երկ–յան և միջավայրի բեկման ցուցչի արտադրյալին:

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ, ցամաք. հաղորդակցության ուղիներ: Երկրի սոցիալ–տնտ. կյանքում ունեցած դերին և չափերին համապատասխան՝ Ճ. բաժանվում են մայրուղիների, միջքնակավայր., քաղաք. և գյուղ. Ճ–ի: Հայկ. լ–աշխարհում կարավան. հնագույն կենտրոն Ճ. էին Վանա լճի արլ. ափերը՝ Տուշպա (Տոսպ–Վան) մայրաքաղաքով, և Արարատյան դաշտը՝ Արգիշտիխինիլի (Արմավիր) ք–ով, հետագայում (մինչև V–VI դդ.)՝ Արտաշատ, ապա՝ Դվին մայրաքաղաքները: Հայաստանը հատվում էր հս. և հվ. մայրուղիներով, որոնցից առավել հայտնի էր Արքունի պողոտան (Արտաշատ–Տիգրանակերտ մայրուղին, մ. թ. ա. II–մ. թ. I դդ.), հետագայում (IX–XI դդ.)՝ Նախիջևան–Դվին–Անի–Կարին (Էրզրում)–Տրապիզոն, Դվին–Սևանա լճի արլ. ափ–Թիֆլիս, XIX դ–ի սկզբից՝ Երևան–Ջալալօղլի–Թիֆլիս, Երևան–Ջուլֆա–Թավրիզ, Երևան–Էրզրում–Երզնկա, Երևան–Ախալքալաք–Փոթի և այլ մայրուղիներ: XXI դ–ի սկզբից կառուցվում է Հս–իվ ավտոմայրուղին, որը Սև ծովից ձգվում է մինչև Մեղրի (Իրանի սահման):

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ԾԱՌ (Ravenala madagascariensis), աղամաթուզազգիների (բանանազգիներ) ընտանիքի ծառանման բույս: Բունը բարձր է՝ մինչև 10 *մ*, տերևները խոշոր են, հովհարաձև դասավորված: Տերևապատյանները երկար են և մեծ քանակությամբ ջուր են հավաքում, որը երբեմն օգտագործվում է խմելու համար (այստեղից՝ Ճ. ծ. անվանումը): Պտուղը հատապտուղ է, ձևով՝ վարունգի նման: Մադագասկար և Ռեյունյոն կղզիների ընաշխարհիկ է:

ՃԱՆԱՐ (Barbus capito), ծածանաձկների ընտանիքի ձուկ: Ունենն 2 զույգ բեղեր: Խոշոր ձուկ է. երկ.՝ մինչև 1 *մ*, կ. զ.՝ մինչև 20 *կգ*: Կան գաղթող տեսակներ: ՀՀ–ում տարածված է Արաքս, Ախուրյան, Մեծամոր, Հրազդան, Արփա, Որոտան գետերում, նաև Ախուրյանի ջրամբարում, Արարատյան դաշտի ջրանցքներում: Սնվում է միջատներով, որդերով, խեցգետնակերպներով, փափկամարմիններով, մանրաձկներով: Սիրող. որսաձուկ է:

ՃԱՆԵՐԵՆ, **լազերեն**, ճանների (լազերի) լեզուն: Պատկանում է իբերա–կովկաս. լեզվաընտանիքի քարթվել. ճյուղին: Մեգրելերենի հետ զաներենի բարբառ է: Գիր չունի:

ՃԱՆԻԿՅԱՆ Հովսեփ (1840–1902), բանահավաք–ազգագրագետ: Ճ–ի «Հնութիւնք Ակնայ» (1895) ժող–ը, որին կցված են Կոմիտասի ձայնագրած ու հայկ. ձայնանիշերով նոտագրված Ակնա 25 ժող. երգեր, հարուստ նյութ է պարունակում Ակնա ազգագրության, բանահյուսության և բարբառի վերաբերյալ: Հեղինակ է նաև Ջ. Միլտոնի և Ա. Դանտեի ստեղծագործությունների ազդեցությամբ «Դժոխք» (հ. 1, 2, 1897, 1900) վերնագրով գրքի:

ՃԱՆԿՅՈՒԼՅԱՆ Հարություն, **Կայծիկ Հաճի** (1856–1915), քաղ. գործիչ: 1890–ի հուլիսի 15–ի Գում Գափուի (Կ. Պոլսում) ցույցի կազմակերպիչներից և առաջնորդներից: Ձերբակալվել է, դատապարտվել ցմահ բանտարկության: Ազատ արձակվելով՝ 1897–ին անցել է Կիպրոս: Երիտթուրք. հեղաշրջումից (1908) հետո հաստատվել է Կ. Պոլսում, գործել հնչակյան կուս–յան պատասխանատու մարմիններում, ընտրվել ազգ. երեսփոխան: Մեծ եղեռնի զոհ:

ՃԱՆՃԱՍՊԱՆ (Amanita), գլխարկավոր սնկերի ճանճասպանների ընտանիքի ցեղ: Հայտնի է 50 տեսակ, ՀՀ–ում՝ 11: Սահացու թունավոր սունկ է: Թունավորման ախտանիշներն ի հայտ են գալիս օգտագործելուց 6–12, երբեմն՝ նույնիսկ 30 *ժ* հետո, երբ այլևս գործնականորեն հնարավոր չէ օգնել:

ՃԱՆՃԵՐ իսկական (Muscidae), երկթևանիների կարգի միջատների ընտանիք:

Երկ.՝ 2–15 *մմ*: Հայտնի է 500 տեսակ: Մի շարք տեսակներ մարդու և ընտանի կենդանիների վարակիչ հիվանդությունների հարուցիչների փոխանցողներ են (օր.՝ սենյակային Ճ.), կան մշակաբույսերի վնասատուներ: ՀՀ–ում հանդիպում է մոտ 40 տեսակ: Առավել տարածված են ***տնային ճանճը*** և ***խայթաճանճը:***

ՃԱՆՃԻԿՅԱՆ Կարապիս (1920–1946), բանաստեղծ: Հեղինակ է «Օրէ օր» (հայ., 1950), «Պալքըս» (թուրք.) բանաստեղծությունների ժող–ների:

ՃԱՆՃԱՐՄՆԵՐ (Muscicapidae), ճնճղուկանմանների կարգի թռչունների ընտանիք: Հայտնի է մոտ 400 տեսակ՝ Արլ. կիսագնդում, բազմաքանակ են արևադարձներում և մերձարևադարձներում: Սնվում են միջատներով (այդ թվում՝ ճանճերով, այստեղից՝ անվանումը): ՀՀ–ում հանդիպում է մոտ 40 տեսակ, առավել տարածված են ***տնային ճանճը*** և ***խայթաճանճը:***

«ՃԱՇԱԿ ՈՍԿԵՔԷՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ», պատմ., գիտ., բանասիր. հանդես (1886–1889, Կ. Պոլիս): Խմբ–ներ՝ Մադաթիա Գարագաշյան, Հակոբ Գուրգենյան:

ՃԱՇՈՑ, Տոնանամակ, ՀԱԵ ծիսամատյան: Սահմանում է Տերունի տոների տարեկան տոնակարգը՝ համապատասխան ընթերցվածներով: Պարունակում է կեսօրվա («Ճաշու», այստեղից էլ՝ Ճ.) ժամերգության ընթերցվածները և երգասացությունները: Ճ–ի նախն. կազմումն ավանդաբար կապվում է Երուսաղեմի 1–ին եպս. ***Հակոբ Տյառնեղբոր*** (I դ.) և Կյուրեղ Երուսաղեմացու անունների հետ: Ենթադրվում է, որ հայ. է թարգմանվել և կարգավորվել V դ–ում: Ճ–ի հնագույն ձեռագրերը VIII–IX դդ–ի են: Մտնդ–ում պահվող Ճ–ներից ուշագրավ է «***Հետում Բ թագավորի Ճաշոցը***» (1286, ձեռ. № 979): Ճ. առաջին անգամ տպագրվել է 1686–88–ին Վենետիկում:

ՃԱՊԱՂՋՐԻ ԴԱՇՏ, Հայկ. լ–աշխարհում՝ Հայկ. Տավրոսի հս. ստորոտին՝ Գյունեկ գետի ստորին հոսանքում: Տարածքը՝ մոտ 500 *կմ*^{2}, բարձր.՝ 1000–1200 *մ*: Խզման հետևանքով առաջացած իջվածք է: Ճ. դ–ում է Կթաոիճ ամրոցը:

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԳԻՐ, *հիերոգլիֆներից* բաղկացած (մոտ 15 հգ.) գրային համակարգ, որոնցով նշանակվում են մեկ կամ մի քանի համանիշ ձևույթներ և վանկ. այբուբենի 2 տարբերակ՝ հիրագանա, կատականա: Գրությունը վերից վար է, աջից՝ ձախ (երբեմն՝ ձախից աջ):



ՃԱՊՈՆԱԿԱՆ ԾՈՎ, Խաղաղ օվկ–ի կիսափակ ծով Եվրասիա մայրցամաքի, Ճապոն. կղզիների և Սախալին կղզու միջև: Ողողում է ՌԴ–ի, Կորեայի և Ճապոնիայի ափերը: Ափագծի երկ.՝ 7600 *կմ* (3240 *կմ*՝ ՌԴ սահմաններում): Կորեական նեղուցով հաղորդակցվում է Արևելաչին. և Դեղին ծովերի, Ցուգարու նեղուցով՝ Խաղաղ օվկ–ի, Լապերուզի և Նևելսկու նեղուցներով՝ Օխոտի ծովի հետ: Տարածքը՝ 1062 հգ. *կմ*^{2}, խոր.՝ 3720 *մ*: Ձմռանը հս. մասը սառցակալում է: Գլխ. նվինգստներն են Վլադիվոստոկը, Նախոդկան (ՌԴ), Օտարուն, Նիիգատան, Յուրուգան (Ճապոնիա), Վոնսանը, Հիննամը, Չհոնջինը (Կորեայի ԺՀՀ):

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԿՂԶԻՆԵՐ, Խաղաղ օվկ–ի արմ. մասում, հիմնականում՝ Ճապոնիայում: Խոշոր կղզիներն են Հոնսյուն, Հոկայդոն, Կյուսյուն, Սիկոկուն:

ՃԱՊՈՆԱԿԱՆ ՄԱՅՐԻ (Gyptomeria), ճահճանոճազգիների ընտանիքի մշտադալար ասեղնատերև ծառ: Հայրենիքը Չինաստանը և Ճապոնիան են: Դիմացկուն Ճ. մ. լայնորեն մշակում են բարեխառն գոտում, այդ թվում՝ Կովկասի սևծով. ափին և Ղրիմում:

ՃԱՊՈՆԱ–ՉԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ 1894–95, Ճապոնիայի պատերազմը Չինաստանի դեմ՝ Կորեայում ճապոն. վերահսկողություն սահմանելու համար: Չին. բանակն ու նավատորմը պարտվել են: 1895–ի ապրիլի 17–ին կնքվել է Սիմոնոսեկիի պայմանագիրը, որով Չինաստանը հրաժարվել է Կորեայի նկատմամբ իր գերիշխանությունից. Ճապոնիային է հանձնել Թայվան և Պենհուլեադո կղզիները, պարտավորվել վճարել ռազմատուգանք:

ՃԱՊՈՆԱՑԻՆԵՐ, ժողդ, Ճապոնիայի հիմն. բնակչությունը: Ընդհ. թիվը՝ 130 մլն, Ճապոնիայում՝ 127 մլն (2012): Լեզուն՝ ճապոն.: Հիմնականում սինտոյական և բուդդայական են, կան նաև քրիստոնյաներ և սինկրեկտիկ պաշտամունքի հետևորդներ:

ՃԱՊՈՆԵՐԵՆ, ճապոնացիների լեզուն, Ճապոնիայի պետ. լեզուն: Գրավոր հնագույն հուշարձաններն ավանդված են VI–VII դդ–ից: Օգտագործում է ***ճապոնական գիրը***:

ՃԱՊՈՆԻԱ, պետություն Խաղաղ օվկ–ի հս–արմ–ում՝ գրեթե 4 հգ. *կմ* ձգվող մի խումբ կղզիների (Հոկայդո, Հոնսյու, Սիկոկու, Կյուսյու, Ռյուկյու ևն) վրա: Տարածքը՝ 377,9 հգ. *կմ*^{2}, բն.՝ 127 մլն (2015): Մայրաքաղաքը՝ ***Տոկիո***: Պետ. լեզուն՝ ճապոն.: Կառավարման ձևը՝ միապետ.: Պետության գլուխը կայսրն է, օրենսդր. մարմինը՝ երկպալատ խորհրդարանը: Բաժանված է 47 վարչ. պրեֆեկտուրաների: Հավատացյալները հիմնականում բուդդայական (մահայանա) և սինտոյական են, կան նաև քրիստոնյաներ ևն: Անդամակցում է ՄԱԿ–ին, ԱՀԿ–ին, ԱՄՀ–ին, Սակացուցակների և առևտրի գլխ. համաձայնագրին ևն: Արտահանում է մեքենաներ և սարքավորումներ, էլեկտրոնիկա, քիմիկատներ, տեքստիլ ևն, ներմուծում վառելանյութ, արդ. հումք և սարքավորումներ, սննդամթերք: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 32,6 հգ. ԱՄՆ դոլար է (2009): Դրամ. միավորը՝ իեն:

Ճ–ի տարածքում մ. թ. ա. 7500–ից ձևավորվել են նորքարիդար. ձյոմոն, ավելի ուշ՝ էյայոի մշակույթները: Մ. թ. III դ–ում կազմավորվել է Յամատո ցեղ. միությունը, որի հիման վրա էլ ձևավորվել է ճապոն. պետականությունը: Այն արդեն 710–ին ունեցել է իր մշտ. մայրաքաղաքը՝ Նարան: 1192–ից Ճ. ղեկավարել են սյոգունները (զինվ. առաջնորդներ): XVI դ–ում Ճ–ում երևացել են եվրոպացիները, որոնք, առևտրին զուգահեռ, տարածել են քրիստոնեություն: Սամուրայները, ի դեմս օտարերկրացիների տեսնելով լուրջ սպառնալիք, 1637–ից արգելել են նրանց մուտքը Ճ. և երկիրը մեկուսացրել արտաքին աշխարհից: 1854–ին զենքի գործադրման սպառնալիքով ԱՄՆ–ն Ճ–ին ստիպել է բացել որոշ նվինգստներ օտարերկրացիների համար: 1867–68–ին հեղ–յամբ տապալվել է սյոգունների կառ–յունը: 1889–ին ընդունվել է սահմանադրություն, որով Ճ. հռչակվել է սահմանադր. միապետություն: 1890–ին կազմավորվել է առաջին խորհրդարանը: 1894–95–ին Ճ. պատերազմ է մղել Չինաստանի, 1904–05–ին՝ Ռուսաստանի դեմ: 1910–ին բռնակցել է Կորեան՝ այն հայտարարելով իր գաղութը: ԱՀՊ–ին մասնակցել է Անտանտի կողմից: 1931–ին բռնակցել է Մանջուրիան: 1937–ին պատերազմ է սկսել ամբողջ Չինաստանը բռնազավթելու համար: Հարձակվել է ԽՍՀՄ–ի և Մոնղոլիայի վրա: ԵՀՊ–ի ժամանակ դաշնակցել է Գերմանիայի և Իտալիայի հետ, հարձակվել ԱՄՆ–ին և Մեծ Բրիտանիային պատկանող խաղաղօվկիանոս. ռազմ. հենակետերի վրա: ԱՄՆ–ն 1945–ին ատոմ. ռումբեր է նետել Հիրոսիմա (օգոստ. 6–ին) և Նագասակի (օգոստ. 9–ին) ք–ների վրա: Ճ. 1945–ի սեպտ. 2–ին ստորագրել է անվերապահ կապիտուլյացիայի ակտը: 1951–ին ԱՄՆ–ի, Մեծ Բրիտանիայի, մի շարք այլ երկրների հետ Ճ. կնքել է Սան Ֆրանցիսկոյի խաղաղության պայմանագիրը: ԱՄՆ–ի հետ ստորագրել է անվտանգության մասին պայմանագիր, որով ԱՄՆ–ն իրավունք է ստացել հենակետեր տեղակայել Ճ–ում: 1956–ին ԽՍՀՄ–ի հետ ստորագրել է համատեղ հռչակագիր՝ երկրների միջև պատերազմ. վիճակը դադարեցնելու մասին: 1955–ից երկրում իշխել է Ճ–ի լիբերալ–դեմոկրատ. կուս–յունը (ԼԴԿ), 1993–ից՝ կոալիցիոն կառ–յունը, 1996–2009–ին՝ կրկին ԼԴԿ–ն, 2009–ից՝ Դեմոկրատ. կուս–յունը (փոքր կուս–յունների հետ դաշինքով): 2011–ին տեղի է ունեցել երկրի պատմության մեջ ամենաուժգին երկրաշարժը, որի հետևանքով զոհվել է ավելի քան 15 հգ. մարդ: Երկրի տնտ–յանը հասցվել է զգալի վնաս: Վթարվել է ատոմ. էլեկտրակայանի ռեակտորը՝ առաջացնելով ծովի ջրի և ցամաքի ճառագայթաակտիվ աղտոտում: Հայերը Ճ. են եկել XIX դ–ի 2–րդ կեսից: Այստեղ գործել են «Աղաբեկ և ընկերություն» առևտր. հաստատությունները: 1919–20–ին Ճ–ում գործել է ՀՀ դիվանագիտ. ներկայացուցիչ՝ աշխարհում 1–ին կին հյուպատոսը՝ Դիանա ***Աբգարը***: Ներկայում Ճ–ում բնակվում է շուրջ 100 հայ, հիմնականում՝ Տոկիոյում: Գործում է հայագիտ. կենտրոն:

ՃԱՊՈՆԻԱՅԻ ԼԻԲԵՐԱԼ–ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է 1955–ին՝ Լիբերալ և Դեմոկրատ. կուսյունների միավորմամբ: 1955–93–ին ձևավորել է միակուս. կառ–յուն, 1999–2009–ին՝ «Նոր Կոմեյտո» կուս–յան հետ դաշինքով: Արտահայտում է խոշոր կապիտալի, բյուրոկրատիայի, գյուղ. բնակչության մի մասի շահերը:

«ՃԱՊՈՆԻԱՅԻ ՌԱԴԻՈ», արտերկրի համար ռադիոհաղորդումների ծառա–

յություն՝ «Էն Էյչ Քեյ» հեռուստառադիոհաղորդակց. միավորման կազմում: Հիմնադրվել է 1935–ին Տոկիոյում: Հաղորդումներ է թողարկում 12 լեզվով՝ շաբաթական 330 *ժ* տևողությամբ:

ՃԱՌԱԳԱՅԹ, 1. որևէ լուսաղբյուրից դուրս եկող լույսի նեղ շերտ: 2. Մասնիկներում էլեկտրամագնիս. տատանումների էներգիայի ուղղորդված հոսք: 3. Գիծ, որի երկայնքով տարածվում է ճառագայթման էներգիան (երկրչփ. օպտիկայում) կամ ձայն. էներգիան (երկրչփ. *ձայնագիտության* մեջ): 4. (Մաթ.) ուղղի մաս, որն ընկած է այդ ուղղի որևէ կետի մի կողմում և ներառում է այդ կետը:

«ՃԱՌԱԳԱՅԹ», քաղ., հաս., գր. շաբաթաթերթ (1947–52, Ստամբուլ): Արտոնատեր-խմբ.՝ Խաչիկ Ամիրյան, խմբ-ներ՝ Հակոբ Սվասլյան, Նուպար Ազարյան:

ՃԱՌԱԳԱՅԹԱԱԿՏԻՎ ԱՂՏՈՏՈՒՄ, իոնացնող ճառագայթման առաջացրած ֆիզ. աղտոտման տեսակ: Կարող են առաջացնել որոշակի սարքերը (օր.՝ բժշկ. ռենտգեն. սարքավորումները, հեռուստացույցը ևն) կամ ճառագայթաակտիվ նյութերը:

ՃԱՌԱԳԱՅԹԱԱԿՏԻՎ ԹԱՓՈՆՆԵՐ, գործող նորմատիվներով և կանոններով հաստատված ՄԹՉ-ները գերազանցող *ճառագայթաակտիվ տարրեր* պարունակող նյութեր և կենսբ. օբյեկտներ, որոնք ենթակա չեն հետագա օգտագործման: Առաջանում են ճառագայթաակտիվ նյութերով աշխատելիս:

ՃԱՌԱԳԱՅԹԱԱԿՏԻՎ ԻԶՈՏՈՊՆԵՐ, քիմ. տարրերի անկայուն *իզոտոպներ*, որոնք ինքնակամ փոխակերպվում են այլ *նուկլիդների*: Այն ճ. ի., որոնց կյանքի տևողությունը համեմատելի է Արեգակին. համակարգի տարիքի հետ, կոչվում են բնական ճ. ի.: Դրանցից երեքը՝ ^{238}U, ^{235}U և ^{232}Th, կազմում են 3 ճառագայթաակտիվ ընտանիքների նախասկիզբը, որոնց տրոհման վերջն. արդյունքը կապարի կայուն իզոտոպներն են: Օգտագործվում են գիտ. հետազոտություններում, արդ-յան, գղտ-յան և բժշկության մեջ:

ՃԱՌԱԳԱՅԹԱԱԿՏԻՎ ՆՈՒԿԼԻԴ, նուկլիդ, որի միջուկը ճառագայթաակտիվ է. տարբերում են α–, β– և γ-ճառագայթաակտիվ նուկլիդներ, որոնք տրոհվում են էլեկտրոնների զավթման կամ ինքնակամ եղանակներով:

ՃԱՌԱԳԱՅԹԱԱԿՏԻՎ ՏԱՐՐԵՐ, քիմ. տարրեր, որոնց բոլոր *իզոտոպները* ճառագայթաակտիվ են (տեխնեցիում, պրոմեթիում, պոլոնիում և պարբեր. համակարգում նրանց հաջորդող բոլոր տարրերը):

ՃԱՌԱԳԱՅԹԱԱԿՏԻՎ ՏԵՂՈՒՄՆԵՐ, միջուկ. պայթյունից կամ միջուկ. ռեակտորի արտանետումներից առաջացած և շրջակա միջավայր թափանցած ճառագայթաակտիվ նյութեր: Լինում են **տեղական, վերնոլորտային և ներքնոլորտային**:

ՃԱՌԱԳԱՅԹԱԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ, ճառագայթաակտիվ տրոհում, ռադիոակտիվություն (< *ռադիո* և լատ.՝ activus – գործուն), անկայուն քիմ. տարրերի միջուկների ինքնակամ փոխակերպումն այլ տարրերի միջուկների, որն ուղեկցվում է տարր. մասնիկների կամ *գամմա-քվանտի*, այլ միջուկների առաքումով: Հայտնի է ճ-յան 4 տեսակ՝ α-, β-տրոհում, միջուկների ինքնակամ բաժանում, պրոտոն. ճ. (կանխատեսված են, բայց դեռ չեն դիտվել երկպրոտոն. և երկնեյտրոն. ճ.): Ճ. առաջինը հայտնաբերել է (1896) Ա. *Բեքերելը*:

ՃԱՌԱԳԱՅԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ բժշկական, բժշկագիտ-յան բնագավառ. ուսումնասիրում է հիվանդությունների ախտորոշման, բուժման նպատակով իոնացնող ճառագայթների օգտագործումը, օրգանիզմի վրա ճառագայթների ազդեցությունը և հակաճառագայթ. պաշտպ-յան խնդիրները:

ՃԱՌԱԳԱՅԹԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, իոնացնող ճառագայթների կիրառումը բուժիչ նպատակով: Ճառագայթման աղբյուր են դրանք ծնող հարմարանքները և *ճառագայթաակտիվ պատրաստուկները*: Ճ. ներառում է α–, β–, γ– ռենտգենաբուժությունը ևն:

ՃԱՌԱԳԱՅԹԱԵՐԿՐԱՔԻՄԻԱ, *երկրաքիմիայի* բաժին. ուսումնասիրում է *ճառագայթաակտիվ տարրերի* տարածման, տեղաբաշխման և շարժման օրինաչափությունները, ինչպես նաև իզոտոպ. կազմը:

ՃԱՌԱԳԱՅԹԱԶԳԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, կենսբ. օբյեկտների զգայունությունն իոնացնող ճառագայթների նկատմամբ: Սովորաբար Ճ-յան չափ է ծառայում ճառագայթման այն չափաքանակը, որը ոչնչացնում է բջիջների կամ օրգանիզմների 50 %-ը (մահացու չափաքանակ): Կաթնասունների բջիջների համար մահացու չափաքանակը 390 *ռադ* է, մկների և մարդկանց՝ 450–700 *ռադ*, խմորասնկերի՝ 30 հզ. *ռադ*, մի շարք բույսերի սերմերի համար՝ մոտ 100 հզ. *ռադ*:

ՃԱՌԱԳԱՅԹԱԷԿՈԼՈԳԻԱ, *էկոլոգիայի* բաժին. ուսումնասիրում է ռադիոակտիվ նյութերի կուտակումներն օրգանիզմներում և դրանց միգրացիան կենսոլորտում:

ՃԱՌԱԳԱՅԹԱԻԶՈՏՈՊԱՅԻՆ ՀՐԹԻՌԱՅԻՆ ՇԱՐԺԻՉ, իզոտոպային հրթիռային շարժիչ, հրթիռ. շարժիչ, որտեղ բանող մարմինը տաքացնելու համար օգտագործվում է ճառագայթանուկլիդի տրոհման էներգիան կամ տրոհման արգասիքներն իրենք են ստեղծում ռեակտիվ շիթ: Փորձարար. ճ. հ. շ-ի քարշուժը փոքր է:

ՃԱՌԱԳԱՅԹԱԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ռադիոկենսաբանություն, գիտ-յուն օրգանիզմների և համակեցությունների վրա իոնացնող ճառագայթների բոլոր տեսակների ազդեցության մասին: Զբաղվում է նաև ճառագայթումից օրգանիզմի պաշտպ-յան միջոցների, հետճառագայթումային վնասվածքներից պաշտպ-յան նոր միջոցների որոնման և իոնացնող ճառագայթների օգտագործման խնդիրներով: Ձևավորվել է XX դ-ի 1-ին կեսին:

Կենդանի օրգանիզմի վրա իոնացնող ճառագայթման ազդեցության առաջին ուսումնասիրողներից էին Միհրան *Ղասապյանը* (ԱՄՆ, Ֆիլադելֆիա) և Իվան Թարխանովը (1846–1908, Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ.): Ղասապյանը Ֆիլադելֆիայում 1-ին բժիշկ-ռենտգենաբաններից էր, մշակել է ռենտգենյան ճառագայթներով չարորակ ուռուցքների բուժման եղանակ (մահացել է ճառագայթումից ստացած այրվածքներից): ՀՀ-ում Ճ-յան ոլորտի առաջին հետազոտությունները կատարվել են Բարդուղիմեոս *Ֆանարջյանի* գլխավորությամբ, այնուհետև նման հետազոտություններ կատարվել են ԵՖԻ արագացուցիչի վրա, այժմ իրականացվում են *Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոնում*, բուհերի կենսբ. ուղղվածության ամբիոններում (օր.՝ ԵՊՀ կենսբ-յան ֆակ-ում), ԳՀԻ-ների լաբորատորիաներում և այլուր:

ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱՂՏՈՏՈՒՄ, ճառագայթանուկլիդների թափանցումը կենդանի օրգանիզմներ ու դրանց բնակության միջավայր (մթն., ջրոլորտ, բնահող)՝ միջուկ. պայթյունների, շրջակա միջավայրի ճառագայթաակտիվ թափոնների հեռացման, ճառագայթաակտիվ հանքապարների հանքավայրերի շահագործման, ատոմ. ձեռն-ներում վթարի հետևանքով:

ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԵՐ, փաստաթուղթ, որը կանոնակարգում է իոնացնող ճառագայթման ազդեցության թույլատրելի մակարդակները՝ հաշվի առնելով մարդու արտաքին և ներքին ճառագայթահարումը: Հիմք են ընդունված ՄԹՉ-ները ամբողջ մարմնի և տարբեր կրիտիկ. օրգանների համար:

ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԳԵՆԵՏԻԿԱ, ուսումնասիրում է օրգանիզմների ժառանգ. փոփոխությունները (մուտացիաներ) ճառագայթահարման (սովորաբար՝ ռենտգեն. ճառագայթներով կամ ռադիոնուկլիդներով) ազդեցությամբ:

ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ, միջոցառումների համալիր, որը կիրառում են երկրի ԶՈՒ և ԱԻՆ ստորաբաժանումները տեղանքի փաստացի ճառագայթ. աղտոտման և նրա մշակման մասին տեղեկույթ ստանալու նպատակով:

ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, առաջանում է օրգանիզմի վրա իոնացնող ճառագայթների ՄԹՉ-ները գերազանցող ազդեցության դեպքում: Մարդու ճ. հ. կարող է ընթանալ կայծակնային, սուր, ենթասուր և քրոնիկ.: Դրսևորվում է հիմնականում արյունաստեղծ օրգանների, նյարդ., ստամոքսաղիք. համակարգերի ախտահարումներով:

ՃԱՌԱԳԱՅԹԱԼՄԱՆԱԿ ՆՅՈՒԹԵՐ, ռադիոմիմետիկ նյութեր (< *ռադիո*... և հուն.՝ mimetikos – նմանական), քիմ. միացություններ, որոնց ազդեցությունը մարդկանց և կենդանիների օրգանիզմների, նրանց առանձին բջիջների, օրգանների և հյուսվածքների վրա նման է իոնացնող ճառագայթների կենսբ. ազդեցությանը:

ՃԱՌԱԳԱՅԹԱՉԱՓ, ակտինոմետր (< հուն. akstis – ճառագայթ և ...*մետր*), 1. արեգակն. ուղիղ ճառագայթման ինտենսիվության չափման գործիք՝ ըստ ճառագայթումը կլանող սևացրած մակերևույթի տաքացման աստիճանի: 2. Էլեկտրամագնիս. էներգիայի չափման գործիք. հիմնված է ջերմազգայուն տարրի էլ. դիմադրության փոփոխության վրա, ըստ չափվող ճառագայթման էներգիայի կլանման աստիճանի:

ՃԱՌԱԳԱՅԹԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ, ակտինոմետրիա (< հուն. aktis – ճառագայթ և ...*մետր*), *օդերևութաբանության* բաժին. ուսումնասիրում է արեգակն., մթն. և երկր. ճառագայթման տեղափոխությունն ու փոխարկումը Երկրի մթն-ում:

ՃԱՌԱԳԱՅԹԱՄՆԿԵՐ (Actinomycetales), **ակտինոմիցետներ, շողասնկեր**, բակտերիաների և սնկերի հատկություններով օժտված միկրոօրգանիզմներ: Հիմնականում օդակյաց են: Առաջացնում են բջիջներ և հիֆեր: Ճ. են միկոբակտերիաները, ստրեպտոմիցետները և մոտ 700 այլ տեսակ: Տարածված են հողում, ջրամբարներում, օդում և բուս. մնացորդներում: Մի քանիսը կենդանիների,

մարդկանց և բույսերի մակաբույծներ են: Հակաբիոտիկներ (հիմնականում՝ ստրեպտոմիցետներ), գունակներ, վիտամիններ են առաջացնող Ճ. օգտագործում են մանրէաբան. արդ–յան մեջ:

ՃԱՌԱԳԱՅԹԱՎՈՐՆԵՐ, ռադիոլարիաներ (լատ.՝ radius – ճառագայթ), սարկոդայինների ենթատիպի նախակենդանիների դաս, միաբջիջ, մեծ մասամբ՝ բնականոն աղիությամբ տաք ջրերի ծով. կենդանիների խումբ (ավելի քան 7000 տեսակ)՝ 0,3–1 *մմ* և ավելի չափերով: Կմախքը բաղկացած է ներքին՝ պլազմային, և արտաքին՝ միներալային մասերից: Ճ. օվկ–ի հատակին առաջացնում են Ճ–ի տիղմ, որն աստիճանաբար վերածվում է նստվածքի:

ՃԱՌԱԳԱՅԹԱՔԻՄԻԱ, *քիմիայի* բաժին. ուսումնասիրում է *ճառագայթաակտիվ իզոտոպների*, տարրերի ու նյութերի քիմ. հատկությունները և ֆիզքիմ. օրինաչափությունները, դրանց անջատման ու կոնցենտրացման եղանակները: Ներառում է նաև արդ–յան ճյուղ, որն զբաղվում է բարձրճառագայթաակտիվ նյութեր պատրաստելու և միջուկ. վառելիքը վերականգնելու, ճառագայթաակտիվ իզոտոպներ անջատելու, ինչպես նաև ճառագայթումից պաշտպանվելու հատուկ տեխնիկա և սարքավորումներ կիրառելու եղանակներ մշակելու հարցերով:

ՃԱՌԱԳԱՅԹԱՔԻՄԻԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, բնական և արհեստականորեն ստացված նյութերում *ճառագայթաակտիվ նուկլիդների* բաղադրության որոշման քանակ. և որակ. եղանակների ամբողջություն: Ի տարբերություն ճառագայթաչափ. վերլուծության՝ լայնորեն կիրառում են ոչ միայն ֆիզ., այլև բաժանման և մաքրման քիմ. եղանակները: Ճ. վ. օգտագործվում է միջուկ. վառելիքի, նրա քայքայման արդյունքների, միջուկ. ռեակցիաների հետևանքով ստացվող իզոտոպների հետազոտման համար:

ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ, ճառագայթային մուտագենեզ, իոնացնող և ԱՄՃ–ի ազդեցությամբ առաջացած ժառանգ. փոփոխություններ (մուտացիաներ):

ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ, կենսաքիմ., ֆիզիոլոգ., գենետիկ. և այլ փոփոխություններ. առաջանում են կենդանի բջիջների և օրգանիզմների վրա իոնացնող և ԱՄՃ–ի ներգործությունից: Ճ. կ. ա–յան հիմքում ընկած են մոլ–ների իոնացման և գրգռման կենսընթացները, կենսապոլիմերների (գլխավորապես՝ ԴՆԹ–ի) ֆունկցիաները փոփոխող ճառագայթաքիմ. ռեակցիաները:

ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ՈՒԺ, լույսի էներգիական ուժ, *ճառագայթման հոսքի* տարածաանկյունն. խտություն. հավասար է *մարմնային անկյան* մեջ լույսի աղբյուրի ճառագայթած հոսքի և այդ մարմնային անկյան մեծության հարաբերությանը: Լուս. մեծությունների համակարգում Ճ. ու–ի՝նմանօրինակը *լույսի ուժն* է: ՄՄՀ–ում Ճ. ու–ի միավորը *Վտ/սր* է:

ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄ, *իոնացնող ճառագայթումը* և էլեկտրամագնիս. ալիքների առաջացումը արագացումով շարժվող լիցքավորված մասնիկներով: Ատոմը և ատոմ. այլ համակարգեր ճառագայթում են գրգռված վիճակից ավելի փոքր էներգիայով վիճակի *քվանտային անցումների* ժամանակ: Ճ. են անվանում նաև ազատ էլեկտրամագնիս. դաշտը:

ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄԱՅԻՆ ՖՈՆ (ֆիզ.), բնական և տեխնածին ճառագայթում. գործոնների համատեղ ազդեցությամբ պայմանավորված իոնացնող *ճառագայթում*: **Բնական Ճ. ֆ.** ստեղծում են բնության մեջ ցրված ճառագայթանուկլեիդները (84 %, պարունակվում են երկրակեղևի մակերևութ. շերտում ու գետնամերձ օդում, բնահողում, ջրում, բույսերում, աննդամթերքում, մարդու և կենդանիների օրգանիզմներում) և տիեզ. ճառագայթումը (16 %): **Տեխնածին Ճ. ֆ.** կապված է հիմնականում հանքապարների մշակման և տեղափոխման, քարածխի, նավթի ու գազի և այլ այրվող հանածոների այրման, նաև միջուկ. զենքի փորձարկման ու միջուկ. էներգետիկայի հետ:

ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, նորմերով, կանոններով և նորմատիվներով սահմանված իոնացնող ճառագայթումից բարձր ճառագայթումների ազդեցությունը (մարդու օրգանիզմի վրա) փոքրացնող միջոցներ՝ ուռուցք. հիվանդությունների, գենետիկ. խանգարումների առաջացման հավանականությունը նվազեցնելու և օրգանների ու հյուսվածքների ճառագայթահարումը բացառելու նպատակով: Եղանակներն են՝ ֆիզ. պաշտպ–յունը՝ ճառագայթման աղբյուրի և օբյեկտի միջև տեղակայվող, ճառագայթումը լավ կլանող նյութերի (կապար, բետոն ևն) կիրառումը, քիմ. պաշտպ–յունը՝ օրգանիզմի մեջ ճառագայթապաշտպան նյութերի ներմուծումը ևն:

ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄԱՅԻՆ ՋԵՐՄԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ, ճառագայթային ջերմափոխանակություն, էներգիայի տեղափոխության շարժընթաց, որը պայմանավորված է նյութի ներքին էներգիայի մի մասի ճառագայթ. (էլեկտրամագնիս. ալիքների կամ ֆոտոնների) էներգիայի փոխակերպմամբ, այդ ճառագայթման տարածության մեջ տեղափոխությամբ և այլ նյութի կողմից նրա կլանմամբ:

ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄԱՅԻՆ ՔԻՄԻԱ, *քիմիայի* բնագավառ. ուսումնասիրում է իոնացնող ճառագայթներով հարուցվող քիմ. շարժընթացները: Զարգացել է 1940–ական թթ–ին՝ կապված միջուկ. ռեակտորների ստեղծման հետ: Հիմն. խնդիրներն են՝ տարբեր նյութերի բաղադրությունների և հատկությունների վրա իոնացնող ճառագայթների ազդեցության ուսումնասիրությունը, քայքայումից դրանց պաշտպ–յան եղանակների մշակումը, օդի թթվածնով ածխաջրածինների ցածրջերմաստիճան. օքսիդացման նևի համար իոնացնող ճառագայթների օգտագործումը:

ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄԱՉԱՓ, **ռադիոմետր**, 1. (տեխ.) օպտիկ. ընդգրկույթի էլեկտրամագնիս. ճառագայթման էներգիայի չափման սարք՝ հիմնված այդ էներգիայի ջերմ. ազդեցության վրա: 2. Ճառագայթաակտիվ աղբյուրների ակտիվության չափման սարք: 3. (Աստղագիտ.) տիեզ. օբյեկտների ճառագայթման հետազոտման ռադիոաստղադիտակի ընդունող սարքը: 4. Զայն. ճառագայթման ճնշման չափման սարք:

ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄԱՉԱՓԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒՉՈՒՄ, հետախուզ. երկրաֆիզիկայի մեթոդների համալիր. հիմնված է հանքապարներում բնական *ճառագայթաակտիվ* նուկլիդների գամմա–ճառագայթման չափման կամ բնահողի օդի մեջ ռադոնի իզոտոպների կոնցենտրացիայի որոշման վրա՝ ճառագայթաակտիվ տարրերի հանքավայրերի և դրանց հետ պարագենետիկորեն կապված օգտ. հանքավայրերի փնտրման և հետախուզման համար:

ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ, 1. (ֆիզ.) նյութերում ճառագայթաակտիվ նուկլիդների ակտիվության (միավոր ժամանակում տրոհումների թվի) չափման մեթոդների ամբողջությունը: Օգտագործում են օրգանիզմը ճառագայթահզոտող. ինդիկատորով հետազոտելիս, հանքաբանության ու երկրբ–յան մեջ և այլուր: 2. Ֆիզիկայի՝ նյութերի *ճառագայթաակտիվության* չափման մեթոդներն ուսումնասիրող բաժին:

ՃԱՌԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ճարտասան. գրկյան տեսակ: Մեծ տեղ է գրավել միջնադար. քրիստ. մատենագրության մեջ: Ճ–յան ենթատեսակներ են ջատագովությունը, ճառը, քարոզը, թուղթը, կանոնը, մեկնությունը: Ճ–յան ականավոր հեղինակներ են Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Նազիանզացին, Հովհան Ոսկեբերանը, Եփրեմ Ասորին, Հակոբ Մծբնացին և ուր.: Հայ իրականության մեջ սկզբնավորվել է V դ–ում: Առաջին հայտնի գործերից են Գրիգոր Ա Լուսավորչի «Յաճախապատումը» (հրտ.՝ 1737), Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը» (հրտ.՝ 1762–63), Հովհան Մայրավանեցու «Խրատ վարուցը» (հրտ.՝ 1836):

ՃԱՌԱՔՅԱՆ Տիգրան Կարապետի (1909–1996), ֆիզիոլոգ, ճառագայթաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1967), պրոֆ. (1971): Բժշկ. ծառայության գեն–մայոր (1961): ԽՍՀՄ ՊՆ գլխ. ճառագայթաբան (1961): Աշխ–ները վերաբերում են ճառագայթակենսբ–յան հարցերին:

ԽՍՀՄ Կարմիր դրոշի, Կարմիր աստղի շքանշաններ:

ՃԱՌԸՆՏԻՐ, Տոնական, ճառերի ընտրանի, բովանդակում է ճառեր, քարոզներ, մեկնող. և պատմագր. երկերից հատվածներ, աղոթքներ, տեսիլքներ, վարքեր, վկայաբանություններ, թղթեր, կանոններ, գրույցներ: Ճ–ի կազմումը կապվում է *Ողոմոն Մաքենացու* անվան հետ, որի ջանքերով 747–ին մեկտեղվել են ճառական բնույթի զանազան նյութ–միավորներ: Նախապես կոչվել է Տոնական, քանի որ ամփոփել է համաքրիստ., ինչպես նաև հայ սրբերի վկայաբանությունները՝ համակարգված ըստ քրիստ. տոների: Հետագայում ներմուծվել են ճառական միավորներ (այստեղից էլ՝ Ճ.): Ճ. միջնադար. մյուս ժող–ներից տարբերվում է գեղ. շարադրանքով և նախատեսված է ոչ արարող., այլ առավելապես եկեղեցուց դուրս ընթերցանության համար: Մտնդ–ում պահվում են տասնյակ ձեռագիր Ճ–ներ, որոնցից ուշագրավ է «*Մշո Ճառընտիրը*»:

ՃԱՌՎԸՇՅԱՆ Զանիկ Սամիկոնի (ծ. 1935), կենսաբան, կենսաֆիզիկոս: Կենսբ. գիտ. դ–ր (1991), պրոֆ. (1992): 1995–ին Արցախի համալսարանում հիմնադրել է բժշկակենսբ–յան և քիմիայի ամբիոն (մինչև 1998–ը՝ վարիչ): Աշխ–ները վերաբերում են լուսասինթեզի, արևի էներգիայի օգտագործման, նաև կենսաֆիզ. էկոլոգիայի ու մթն–ի լազեր. մոնիթորինգի հիմնահարցերին: IAELPS միջազգ. ակադ–ի անդամ:

ՃԱՎԱ (Java), կղզի Մեծ Զոնդյան կղզիների Սալայան կղզեխմբում: Տարածքը՝ 132 հզ. *կմ*^{2}, բն.՝ 140 մլն (2010): Ողողվում է Հնդ. օվկ–ի և Ճավայի ծովի ջրերով: Առլզն

բարձր.՝ 3676 *մ*: Ճ-ում կա 100 հրաբուխ (10-ը՝ գործող): Կլիման մերձհասարակածային է, մուսսոնային: Գետերը կարճ են և ջրառատ: Գերակշռում են պողզոլատերիտ., լեռնանտառ., կարմիր և ալյուվիալ հողերը: Տարածքի 25 %-ը ծածկված է անտառներով: Խոշոր ք-ներն են Ջակարտան, Բանդունգը, Սուրաբայան:

ՃԱՎԱՅԱԿԱՆ ԳԻՐ, *չարական գիր*, բաղաձայն-վանկային գիր *ճավայերենի* համար: Ստեղծվել է հինճավայական գրի (դևանագարիի տարբերակ է) հիման վրա, որն առաջացել է բրահմիից: Պատկանում է մալայա-պոլինեզյան լեզվաընտանիքի ինդոնեզյան ճյուղին:

ՃԱՎԱՅԵՐԵՆ, Ճավա կղզու հիմն. բնակչության լեզուն: Հին ճավայերենի (կավի) գր. հուշարձաններն ավանդված են IX դ-ից: Արդի Ճ-ի հիմն. տարբերակներն են՝ նգոկո (խոսակց.), կրոմո (գր.) լեզուները: Գրի հիմքում արաբ. (XIII–XIV դդ.), լատ. (XVII դ-ից) այբուբենն է:

ՃԱՎԱՅԻ ԾՈՎ, միջկղզային ծով Խաղաղ օվկ-ի արմ-ում՝ Սումատրա, Ճավա և Կալիմանտան կղզիների միջև: Մակերեսը՝ 552 *կմ*^{2}, միջին խոր.՝ 111 *մ*: Զարգացած են ձկնորսությունը, մարգարտի արդյունահանումը:

ՃԱՎԱՅԻՆԵՐ, Ինդոնեզիայի ամենամեծաքանակ ժողդ-ը: Ընդհ. թիվը՝ 900 մլն, Ինդոնեզիայում՝ 86 մլն (2000): Լեզուն՝ *ճավայերեն* և *ինդոնեզերեն*: Հավատացյալները հիմնականում մահմեդական են, կան քրիստոնյաներ, հինդուիստ., բուդդ., ոգեպաշտ. հավատալիքների հետևորդներ:

ՃԱՎՃԱՎԱՁԵ Ալեքսանդր Գաբսևանի (1786–1846), վրացի բանաստեղծ, իշխան, գեն-լեյտ. (1841): Մասնակցել է 1812-ի Հայրեն., 1826–28-ի ռուս-պարսկ., 1828–29-ի ռուս-թուրք. պատերազմներին: 1828–29-ին եղել է Հայկ. մարզի կառավարիչ: Օժանդակել է պարսկահայերի՝ 1828–29-ի տեղափոխության կազմակերպմանն ու տարաբնակեցմանը: 1832-ին մասնակցել է ազնվական. դավադրությանը, 1833-ին աքսորվել է Տամբով: 1834-ին վերադարձել է Վրաստան: 1843-ին մասնակցել է *Շամիլի* դեմ արշավանքին: Հեղինակ է «Գոկչա լիճը» (1841), «Կովկաս» (հրտ.՝ 1852), նաև սիրային (բազմաթիվ բանաստեղծությունների հիման վրա գրվել են երգեր) բանաստեղծությունների և այլ գործերի:

ՃԱՎՃԱՎԱՁԵ Իլյա Գրիգորի (1837–1907), վրացի գրող, իշխան: Վրաց. եկեղեցու սուրբ: Վրաց նոր գրկ-յան և գր. նոր լեզվի հիմնադիրը (Ա. *Ծերեթելու* հետ): Հեղինակ է «Տեսիլք» (1859), «Ճգնավորը» (1883) պոեմների, քաղաքաց. թեմաներով քնարերգության, «Մարդ է արդյոք նա» (1859–63) երգիծ. վիպակի և այլ գործերի: Հայտնի էր ընդգծված հակահայկեցվածքով: Հայ. են հրատարակվել Ճ-ի «Ավազակ Կակոն» (1937) պոեմը, «Ընտիր երկեր» (1937), «Բանաստեղծություններ» (1937, 1938) ժող-ները:

ՃԱՎՃԻՐ (Opopanax), **ջոշիր**, նեխուրազգիների (հովանոցավորներ) ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 3 տեսակ, ՀՀ-ում՝ 1: Հազվադեպ հանդիպում է Արագածոտնի և Կոտայքի մարզերում:

ՃԱՐՄԱՆԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 482, տեղի է ունեցել հայ-վրաց. միացյալ և պարսկ. բանակների միջև Ճարմանայի դաշտում (Կուր գետի ափին) Վահանանց պատերազմի (481–484) ժամանակ: Ավարտվել է պարսկ. զորքի հաղթանակով: Կռվում զոհվել են *Սահակ Բագրատունին*, *Վասակ Սյունիկյանը* և ուր.: Հայկ. զորքը նահանջել է Տայք:

ՃԱՐՄԱՆԴ, 1. զգեստի, իրի (գոտի, հագուստի օձիք, թեզանիք ևն) 2 մասն ագուցող հարմարանք (մետաղ, ոսկոր, փայտ ևն): Մետաղե (ոսկի, արծաթ, բրոնզ, պղինձ ևն) Ճ-ները պատրաստվում են ձուլման, դրվագման, փորագրման, մանրարուրք, սևադման եղանակներով, ընդելուզվում թանկարժեք և կիսաթանկարժեք քարերով: Հայաստանի տարածքում հայտնաբերվել են բրոնզիդար. Ճ-ներ (գոտիների հետ): Ճ-ներ պատրաստվել են Վանում, Արծկեում, Մուշում, Երևանում, Շուշիում և այլուր: 2. **Ագրաֆ** (ֆրանս.՝ agrafe – կեռիկ), ձեռագիր և հնատիպ գրքերի մետաղե կրկնակազմերի գոտենման զարդակապ՝ կազմի փեղկերը փակելու համար:

ՃԱՐՅԱՆ Աբրահամ (1819–1892), մանկավարժ, թարգմանիչ: ՎնտՄՄ անդամ (1840-ից): Կ. Պոլսի Գատը գյուղի Մխիթարյան և Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարանների տեսուչ: Հեղինակ է «Համառօտ երկրաչափութիւն...» (1843), «Սկզբունք պատմութեան ազգաց...» (1846), «Պատմութիւն գաղղիացւոց...» (հ. 1–2, 1849) դասագրքերի:

ՃԱՐՊԱԽՈՏ (Pinguicula), խորշաբուսազգիների ընտանիքի բազմամյա միջատակեր (որսացող) բույսերի ցեղ: Տերևները ծածկված են լորձանյութ արտադրող բջիջներով, որոնց կպչում են միջատներն ու մարսող. ֆերմենտները: Հայտնի է 35 տեսակ:

ՃԱՐՊԱԿԱԼՈՒՄ, ավելցուկային ճարպի կուտակումը ենթամաշկ. ճարպաբջջանքում, ճարպոնում և օրգանիզմի այլ հյուսվածքներում: Ճ-ման դեմ պայքարը սննդակարգ պահպանելն է՝ ճարպերի և ածխաջրերի օգտագործման սահմանափակումը, մկան. ակտիվության բարձրացումը, ներզատիչ հիվանդությունների դեպքում՝ հատուկ բուժում:

ՃԱՐՊԱԿԵՐՊՆԵՐ, **ճարպանմաններ, լիպոիդներ**, օրգ. նյութեր, որոնք մոլ-ի կառուցվածքով և ֆիզքիմ. հատկություններով նման են *ճարպերին*: Ճ. ճարպերի հետ կազմում են *լիպիդների* դասը:

ՃԱՐՊԱՊՈՂՎՈՂ ՈՋԽԱՐՆԵՐ, ցեղեր, որոնք պոչի հատվածում ունեն ճարպի կուտակում: Ըստ պոչի երկ-յան և ձևի՝ տարբերում են կարճ և երկար ճարպապոչավոր խմբեր: Առանձնանում են բարձր մնդավով, դիմացկունությամբ: Ցեղերն են՝ բուրյաթ., մոնղ., վոլոշյան, իմերեթինյան, թուշինյան, լեզգինյան, բոզախ, Ղարաբաղի ևն:

ՃԱՐՊԵՐ, օրգ. միացություններ, *գլիցերինի* և միահիմն ճարպաթթուների էսթերներ (եռգլիցերիդներ): Պատկանում են *լիպիդների* դասին: Բույսերի, կենդանիների և միկրոօրգանիզմների բջիջների և հյուսվածքների հիմն. բաղադրիչ են: Ճ. օրգանիզմի էներգիայի հիմն. աղբյուրն են, մաքուր ճարպի կալորիականությունը 3800 *կՋ*/100 *գ* է: Բնական Ճ. լինում են բուս. և կենդ.:

ՃԱՐՊԻԿ ՄՈՂԵՍ (Lacerta ogilis), իսկական մողեսների ընտանիքի նույնանուն ցեղի մողես: Սարմնի երկ-յունը տարիքի հետ փոխվում է (2,3–14,4 *սմ*), պոչը 1,5–2 անգամ երկար է, ինքնահատվող: Ապրում է մարգագետնատափաստան., թփուտ. բուսականությամբ քարքարոտ տարածքներում, հաճախ՝ առուների ու լճերի ափամերձ վայրերում: ՀՀ-ում հանդիպում է Շիրակի, Արագածոտնի, Կոտայքի, Գեղարքունիքի, Լոռու և այլ մարզերում:

ՃԱՐՊՈՆ (անատոմ.), կաթնասունն կենդանիների և մարդու որովայնամզի ներսային թերթիկի լայն ու երկար ծալք, *միջնդերքի* մաս է: Ճ-ի շարակց. հյուսվածքը հարուստ է արյունատար անոթներով և ճարպ. հյուսվածքով: Որովայնի խոռոչի «պաշտպանական օրգան» է:

ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ, տես *Հռետորություն*:

ՃԱՐՏԱՐ (Վարդանյան Մուրադ, 1856–1900), հայ ազգ-ազատագր. շարժման գործիչ, առաջին ֆիդայիներից: 1894–95-ից գործել է *Աղբյուր Սևորթի* խմբում, հատկապես զբաղվել Կովկասից Խլաթ ու Սասուն զենք փոխադրելով: Սեորթի զոհվելուց հետո էլ իր մարտիկներով մնացել է Խլաթում: Սատնությամբ պաշարվելով՝ զոհվել է թուրք. զորքի դեմ մարտում:

ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ուսումնասիրում է գրունտներում տեղի ունեցող շարժընթացները, որոնց վրա կառուցվելու են շինություններ: Բաժանվում է գրունտագիտ-յան, ճարտարագիտ. երկրադինամիկայի, ծով. և տարածաշրջ. ճարտարագիտ. երկրբ-յան գիտաճյուղերի:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Ա.ՋԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀՀ Ալեքսանդր Թամանյանի անվան, հիմնադրվել է 1990-ին Երևանում՝ որպես Ճարտյան ազգ. թանգարան, 1997-ից՝ այժմյան անվանումով: Թանգարանում պահվում են հայկ. ճարտ-յանը, քաղաքաշինությանը, շինարվ-ի պատմությանը, տեսությանն ու գործն. խնդիրներին, ճարտ-ների, շինարար-ճարտարագետների գործունեությանը վերաբերող նյութեր: Հրատարակում է գիտ. գրկ-յուն, կազմակերպում է ցուցահանդեսներ, գիտաժողովներ, սեմինարներ ևն: Ունի գրադարան (2800 անուն գիրք): Տնօրեններ՝ Աշոտ Գրիգորյան, Անուշ Տեր-Մինասյան (2016-ից):

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա.ՋԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ստեղծվել է 1989-ին՝ ԵՊԻ-ի ճարտարապետաշին., ճարտարագիտաշին. և տրանսպորտի ֆակ-ների հիմքի վրա: Մինչև 2000-ը՝ Երևանի ճարտարապետաշին. ինստ., մինչև 2015-ը՝ ԵՃՇՊՀ: 2015-ին ուներ 5 ֆակ., շուրջ 3,3 հզ. ուսանող: Ռեկտորներ՝ Արեստ Բեգլարյան, Հովհաննես Թոքմաջյան, Գագիկ Գալստյան (2014-ից):

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, շենքերի և այլ կառույցների, նրանց համալիրների նախագծման ու նյութ. արտադր-յան և գեղ. ստեղծագործության ոլորտ: Բնակավայրերի ճարտ. կազմակերպմամբ, քաղաքների և գյուղերի կառուցմամբ, տարաբնակեցման կարգավորմամբ զբաղվում է Ճ-յան ճյուղերից մեկը՝ *քաղաքաշինությունը*: Հատակագծ. և ծավալատարած. լուծումները պայմանավորված են կառույցի բնույթով ու գործառնությամբ: Ճ-յան արտահայտչամիջոցներից են հորինվածքը (կոմպոզիցիա), կառուցիկությունը (տեկտոնիկա), մասշտաբը, համաչափությունը, ռիթմը, ծավալների պլաստիկությունը, նյութերի ֆակտուրան, գույնը, արվ-ների համադրումը ևն:

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ», ամսագիր (2006–ից, Երևան)։ Հայաստանի շինարարների և ճարտ–ների միությունների պաշտոն. հանդես։ Խմբ–ներ՝ Վոլոդյա Կիրակոսյան, Անահիտ Պողոսյան (2008–ից)։

ՃԱՐՏԱՐՈՒԿ (Draba), կաղամբազգիների (խաչածաղկավորներ) ընտանիքի միամյա կամ բազմամյա խոտաբույսերի ցեղ։ Հայտնի է 400 (այլ տվյալներով՝ 300) տեսակ, ՀՀ–ում՝ 9՝ տարածված գրեթե բոլոր մարզերում։ Սևանի ավազանի արլ. մասում աճող մամռակերպ Ճ. գրանցված է ՀՀ Կարմիր գրքում։

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀՀ ԱԻՆ, ստեղծվել է 1999–ին՝ արտակարգ իրավիճակներում գործելու համար մասնագետների վերապատրաստման ինստ–ի (հիմն.՝ 1992) հիմքի վրա։ Մինչև 2005–ը՝ ինստ.։ Ռեկտոր՝ Համլետ Սաթևոսյան (1992–ից)։

ՃԳՆԱՎՈՐ, լ–գագաթ Մեղրու լ–շղթայի կատար. մասում՝ ՀՀ Սյունիքի մարզում։ Բարձր.՝ 3023 *մ*։ Լանդշաֆտը լ–մարգագետնային է։

ՃԳՆԱՎՈՐՅԱՆ Լորիս Հայկազի (ծ. 1937), դիրիժոր, կոմպոզիտոր։ Արշալույս *Ճգնավորյան–Այգենբաուերի* եղբայրը։ Հայ երաժշտության ինստ–ի (1978, Լոնդոնն), Մշակութ. կենտրոնի (1991, Գյումրի, 1992–ից՝ սիմֆ. նվագախմբի պատվ. գեղ. ղեկ.), Երիտասարդ. սիմֆ. նվագախմբի (1991, Երևան), Հայաստանի ֆիլհարմոնիկ երգչախմբի (1994, Երևան) հիմնադիրը։ 1970–75–ին՝ Թեհրանի օպեր. թատրոնի գլխ. դիրիժոր, 1989–2000–ին՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր։ Կազմակերպել է սիմֆ. երաժշտության փառատոներ, «Հոգևոր երաժշտության ժամ» համերգաշարը ևն։ Հեղինակ է օպերաների («Աղավնու վանքը», 1961, «Ռոստամ և Զոհրաբ», 1962–64, ևն), բալետների («Ֆանտաստիկ», 1958–61, «Օթելլո», 1984, ևն), օրատորիաների, սիմֆոնիաների, կոնցերտների, նվագախմբային սյուիտների, խմբերգերի, կինոերաժշտության ևն։

«Հումայուն» (1971, Իրան), ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» (1978) շքանշաններ, ՀՀ «Մովսես Խորենացի» (1996), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1–ին աստիճանի (2012), Ավստրիայի նախագահի ոսկե մեդալներ։

ՃԳՆԱՎՈՐՅԱՆ–ԱՅԶԵՆԲԱՈՒԵՐ Արշալույս Հայկազի (ծ. 1936), տեխ. գիտ. դ–ր (1968)։ Լորիս *Ճգնավորյանի* քույրը։ Աշխ–ները վերաբերում են քիմ. տեխնոլոգիայի հարցերին։ Եղել է ՄԱԿ–ի արդ. տեխնոլոգիայի բաժնի տնօրեն (1970–96), ապա՝ խորհրդական (1966–2013)։ Զբաղվում է նաև Հայոց ցեղասպանության ճանաչման քարոզչությամբ։ Մեփական միջոցներով վերականգնել է ՀՀ Արտաշատ ք–ի № 5 դպրոցը և անվանել հոր՝ ծնունդով արտաշատցի Հայկազ Ճգնավորյանի անունով։

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2013)։

Որդին՝ **Հայկ Այգենբաուեր** (ծ. 1967), փաստաբան։ Իրավաբ. գիտ. դ–ր։ Հեղինակ է «Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքի մասին» (անգլ., 1996) աշխ–յան։ Եղել է Ավստրիայի հայ եկեղեց. համայնքի ատենապետ, Ավստրիայի խորհրդարան է ներկայացրել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը։

Աղջիկը՝ **Թալին Այգենբաուեր** (ծ. 1965), ակնաբույժ։ Բժշկ. գիտ. դ–ր, պրոֆ.։

ՃԳՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, կրոն. և այլ մղումներով հանրությունից, ընտանիքից և մարդկանցից հեռանալը, ճգնակեցությունը *(ասկետիզմ)* ամայի և անմարդաբնակ վայրում՝ ձգտելով բարոյական մաքրության։ Հատուկ է եղել հինարևելյան կրոններին (բրահմայականություն, բուդդայականություն ևն)։ IV դ–ից տարածվել է նաև Հայաստանում։ Միջին դարերում Ճ. աստիճանաբար կուլ է գնացել *վանականության*։

ՃԵՄԱԲԱՆ, *ակադեմիա* բառի վաղ շրջանի հայ. համարժեքը։ Այդպես են կոչվել որոշ բարձր տիպի դպրոցներ, ուսումնագիտ. կենտրոններ։ «Ճ.» անվանումը կապված է Արիստոտելի հիմնադրած դպրոցի հետ, որտեղ նա դասախոսություններ է կարդացել աշակերտների հետ ճեմելով։

Հայ իրականության մեջ հայտնի են Գրիգոր Մագիստրոս Պահլավունու հիմնադրած Ճ. (XI դ.), որը գործել է Անիում, Բջնիում, Սանահինում, XIX դ–ից՝ Մոսկվայի Լազարյան (1814–1918), Կալկաթայի Հայոց մարդասիրական (1821–ից), Կ. Պոլսի Սկյուտարի (1838–ից), Էջմիածնի Գևորգյան (1874–ից), Բեյրութի Մելանքթոն և Հայկ Արսլանյան (1929–ից), Հալեպի Կիլիկյան (1960–ից) և այլ Ճ–ներ։

ՃԵՆԱՊԱՀԻ, խեցեղեն (սպասք, սկահակ, արձանիկներ, ճարտ. տարրեր, մեկուսիչներ, քիմ. սարքեր ևն)՝ ճենապակե խիտ զանգվածից (պլաստիկ հրակայուն կավերից, կաոլինից, դաշտ. սպաթից, քվարցից), որոնք ստացվում են հրակայուն կավե (ճենակավ) թրծումով։ Սպիտակ են, անջրանցիկ, հնչեղ, բարակ շերտում՝ լուսաթափանց, օժտված են բարձր դիմացկունությամբ, ջերմակայունությամբ, էլեկտրամեկուսիչ հատկություններով են։ Ճ. Երևան է եկել Չինաստանում (IV–VI դդ.)։ XVI դ–ում Եվրոպայում տարածվել է փխրուն Ճ. (առանց կաոլինի)։ Առանձնանում են ջնարակված և չջնարակված (կրկնաթուրծ) Ճ–ներ։ Հայաստանում ճենապակե արտադրանքի վաղագույն նմուշներ ստեղծվել են միջնադարում՝ Դվինում և Անիում։

ՃԵՊԵՃՅԱՆ Ռոբերտ (Ռոպեր) Ավետիսի (1909–2000), ակնաբույժ, հաս. գործիչ, հրտ.։ Բժշկ. գիտ. թեկնածու (1970)։ 1948–ին Հալեպում հիմնադրել է Ճեպեճյան ակնաբուժարանը (1971–ից՝ Մերձ. Արևելքի աչքի հիվանդությունների գիտ. կենտրոն)։ 1947–ին կատարել է աչքի եղջերապատվաստման վիրահատություն։ 1948–ին հիմնել է Աչազրկության կանխարգելման սիրիական ընկ–ը, որի նախաձեռնությամբ 1955–ին Հալեպում բացվել է կույրերի առաջին դպրոցը։ ՀՀ ԳԱԱ «Մեսրոպ Մաշտոց» հուշամեդալ։

ՃԵՊԵՃՅԱՆ Սարգիս Ճեպեճի (1864–1920), հայ ազգ–ազատագր. շարժման գործիչ։ *Անդրանիկի* գլխավորած կամավոր. ջոկատի կազմում մասնակցել է բազմաթիվ մարտերի։ 1919–ի սկզբին մեկնել է Կ. Պոլիս, այնտեղից՝ Կիլիկիա։ 1920–ին նշանակվել է Հաճնի ինքնապաշտպ. ուժերի հրամ. (տես *Հաճնի հերոսամարտ 1920*)։ Մարտում ծանր վիրավորվել է և, խուսափելով գերի ընկնելուց, ինքնասպան է եղել։

ՃԵՐՄԱԿԱԹԻԹԵՈՒՆԵՐ (Pieridae), ցերեկ. թիթեռների ընտանիք։ Սպիտակ է, դեղին, նարնջագույն, հազվադեպ՝ սև։ Թևերի բացվածքը՝ մինչև 8 *սմ*։ Հայտնի է 500 տեսակ, ՀՀ–ում՝ 26(27)։ Որոշ տեսակներ (ալոճաթիթեռ, կաղամբաթիթեռ, շաղգամաթիթեռ ևն) գղտ. մշակաբույսերի վնասատուներ են։

«ՃԷՐՏԷի ՇԱՐԳԻՅԵ» («Օրագիր արևելյան»), հայատառ–թուրք. ազգ., քաղ., գիտ. օրաթերթ (1885–1913, Կ. Պոլիս)։ Խմբ–ներ՝ Տիգրան Ճիվելեկյան, Հակոբ Վարժապետյան, Աբիկ Սյուպահաճյան, Օննիկ Պալըզճյան։

ՃԻԱՈՒՐԵԼԻ Միխայիլ Էդիշերի (1894–1974), վրացի կինոռեժ., կինոդրամատուրգ։ Ս. *Ճիաուրելիի* հայրը, Վ. *Ամաջափարիձեի* ամուսինը։ ՎԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1941)։ ՎԽՍՀ (1943), ԽՍՀՄ (1948) ժող. արտիստ։ Նկարահանել է «Սաբա» (1929), «Վերջին դիմակահանդեսը» (1934), «Գեորգի Սահակաձե» (1942–43), «Երդում» (1946), «Բեռլինի անկումը» (1950), «Օթարի այրին» (1958) և այլ ֆիլմեր։ ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1943, 1946, 1947, 1950)։

ՃԻԱՈՒՐԵԼԻ Սոֆիկո Միխայիլի (1937–2008), վրացի դերասանուհի։ ՎԽՍՀ (1972), ՀԽՍՀ (1979) ժող. արտիստ։ Մ. *Ճիաուրելիի* և Վ. *Ամաջափարիձեի* դուստրը։ 1960–ից՝ Թբիլիսիի Կ. Մարջանիշվիլու անվ. թատրոնի դերասանուհի (Ջուլիետ՝ Վ. Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ», Աննա Կարենինա՝ «Աննա Կարենինա»՝ ըստ Լ. Ն. Տոլստոյի, ևն)։ Նկարահանվել է կինոյում [«Մի վշտանա» (1969), «Մի քանի հարցազրույց անձնական հարցերով» (1978), «Լեգենդ Սուրամի ամրոցի մասին» (1984, ռեժ.՝ Ս. Փարաջանով, Դ. Աբաշիձեի հետ), «Աշուղ Ղարիբ» (1988, ռեժ.՝ Ս. Փարաջանով), «Գիշերային թիթեռների թռիչքը» (2005), բոլորը՝ Վրացֆիլմ, «Նռան գույնը» (1969), «Արևիկ» (1978), «Կտոր մը երկինք»՝ ըստ Վ. Թոթովենցի (1980, երեքն էլ՝ Հայֆիլմ)]։ ԽՍՀՄ Պետ. մրց. (1980)։

ՃԻՋՎԻՏՆԵՐ, **եզվիտներ** (Հիսուս անվան լատ. ձևից՝ Jesus), **հիսուսյաններ**, կաթոլիկ կուսակրոն միաբանության անդամներ։ Ինքնանվանումը՝ Հիսուսի ընկ–յուն (Societas Jesu)։ Հիմնադրել է Ի. *Լոյոլան* (1534–ին), 1540–ին հաստատել է Հռոմի պապը։ Նպատակը կաթոլիկության պաշտպանությունն էր ու տարածումը։ Ճ. ապահովում էին խստագույն կարգապահություն՝ կրտսեր անդամների անվերապահ հնազանդության սկզբունքով։ 1610–1767–ին Պարագվայում Ճ. ստեղծել են պետություն։ Հաստատվել են ոչ միայն եվրոպ. երկրներում, այլև Հնդկաստանում, Ճապոնիայում, Չինաստանում, Ֆիլիպիններում։ 1650–ից Ճ. թափանցել են Հայաստան և հայաբնակ այլ վայրեր (Սպահան, Շիրազ, Նոր Ջուղա, Թիֆլիս ևն)՝ կաթոլիկ դարձնելով զգալի թվով հայ ընտանիքների։

ՃԻՃՎԱՋԵՐԾՈՒՄ, դեհելմինթացում, *հելմինթոզների* բուժման և հելմինթների ձվերով շրջակա միջավայրի աղտոտումը կանխելու միջոցառումների համալիր։ Իրականացվում է հատուկ պատրաստուկների միջոցով։

ՃԻՃՈՒՆԵՐ (Vermes), *հելմինթների* խմբի որդեր. մակաբուծում են մարդու և կենդանիների օրգանիզմում։

ՃԻՎԱՆՅԱՆ Մկրտիչ Հովհաննեսի (1848–1906), գեղանկարիչ։ Աշակերտել է ֆրանսիացի նկարիչ Մասոնին (1871–73), կատարելագործվել Իտալիայում (1876–79)։ Հեղինակ է Ոսկեղջյուրի և Բոսֆորի ափերը պատկերող ռոմանտիկ. բնանկարների («Գարուն», «Ֆեներիի փարոսը», «Լորդ Բայրոնի երազը», «Առավոտը ծովի վրա») ևն։ 1960–ական թթ–ին Կ. Պոլսում

ձևավորվել է թատեր. ներկայացումներ, մասնակցել *Պալյանների* կառուցած շենքերից մի քանիսի ներքին հարդարմանը:

ՃԿԱՍՈՒՍԵՐ, 1. **հինավուրց Ճ.**, ուղիղ շեղբով (մինչև 1 *մ* երկ–յան) խոցող և կտրող, հազվադեպ՝ կտրող–խոցող զենք: Հայտնի է XV դ–ից: Տարատեսակներն են՝ կտրված–կարճացրած սայրով, հարթ շեղբով, կտրող հարվածների Ճ.: Սպառազինության մեջ էր մինչև XIX դ., ավելի ուշ կազմում էր շքերթ. համազգեստի մաս: 2. **Մարզական Ճ.**, սուսերամարտի ժամանակակից զենք. ունի 100 *սմ*–ից ոչ ավելի երկ–յամբ եռանկյուն հատվածքով թեթև, էլաստիկ մետաղե շեղբ, բռնակ և ոչ մեծ կլոր պահպանակ (գարդ): Ընդհ. զանգվածը՝ 700 *գ*–ից ոչ ավելի: Ծայրակալը կոճակով է կամ էլեկտրաֆիկացված:

ՃԿԱՓՈՂ, հեղուկների, գազերի մատուցման կամ հեռացման ճկուն խողովակ՝ պատրաստված անջրաթափանց ռետինից գործվածքից:

ՃԿԵՐ, համանուն կենտրոնով գվո Կիլիկյան Հայաստանի հվ–արլ. անկյունում՝ Հայոց (Ալեքսանդրետ) ծոցի արլ. ափամերձ շրջանում: 1185–ին Ռուբեն Գ իշխանը Ճ. և այլ բերդեր գիջել է Անտիոքի դքսությանը և ազատվել գերությունից: Սակայն նրա եղբայր իշխան *Լևոն Բ*–ն նույն թվականին ազատագրել է այդ բերդերը: 1214–ին Լևոն Բ–ն Ճ. պարգևել է խաչակիր ասպետներին՝ զին. ծառայության դիմաց:

ՃԿՎԱԾՔ, 1. ուժային, ջերմաստիճան. կամ այլ ազդեցությամբ կատարվող *ձևախախտման* տեսակ, որը բնութագրվում է առանցքի կամ տարրի (հեծան, սալ ևն) միջին մակերևութ. կորացումով (կորության փոփոխությամբ): Տարբերում են մաքուր, լայն., երկայն. և երկայն–լայն. Ճ–ներ: 2. Այն տեղը, որտեղ ծանրաբեռնվածության ազդեցությամբ առաջացել է *ճկում*: 3. Մարմնամարզ. վարժություն կամ պարարվ–ի դիրք՝ մեջքի ճկում:

ՃԿՈՒՆ ՄԿԱՎԱՌԱԿ, **դիսկետ** (անգլ.՝ diskette), համակարգչի տվյալների փոխանվի, ճկուն մագնիս. կրիչ: Թողարկվել են 8–դյույմանոց (1960–ական թթ–ի վերջերից), 5,25–դյույմանոց (1970–ական թթ–ի վերջերից), 3,5–դյույմանոց (1980–ական թթ.) տրամագծով Ճ. ս–ներ: XX դ–ի վերջից դրանց դուրս են մղել ֆլեշ–հիշողության հիմքով կուտակիչները, օպտիկ. սկավառակները:

ՃՆՃՂԱՊԱՇԱՐ (Polygonlum aviculare), մատիտեղազգիների ընտանիքի միամյա բույս: Աճում է ամենուրեք: Ճ. սխալմամբ նույնացվում է ծտապաշարի հետ, որը խաչածաղկավորների ընտանիքի բույս է: Հայտնի է 15 տեսակ, ՀՀ–ում՝ 1:

ՃՆՃՂՈՒԿԱՆՄԱՆՆԵՐ (Passeriformes), թռչունների կարգ: Երկ.՝ 9 *սմ*–ից (արքայիկներ) մինչև 70 *սմ* (ագռավ): Հայտնի է 5 հգ. տեսակ (թռչունների բոլոր տեսակների մոտ 2/5–ը), մոտ 4 հգ–ը՝ երգեցիկ:

ՃՆՃՂՈՒԿՆԵՐ (Ploceidae), ճնճղուկների ընտանիքի թռչունների ցեղ: Երկ.՝ 12–15 *սմ*: Բազմաթիվ տեսակների արուների կոկորդի վրա կա սև բիծ: 18 տեսակ տարածված է լայնորեն: Գրեթե բոլորը երամային են, իսկ բնադրման շրջանում՝ գաղութային: Որոշ տեսակներ վնասում են ցանքերը: Անապատային ճնճղուկը պահպանվում է:

ՃՆՇԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, **բարոթերապիա** (< լատ. baros – ծանրություն և *թերապիա*), օդի բարձր կամ ցածր ճնշման օգտագործումը բուժիչ նպատակով: Ընդհ. Ճ. իրականացվում է ճնշախցիկներում: Տեղային Ճ–յան մեթոդներից է բժշկ. բաժակները:

ՃՆՇԱՉԱՓ, **բարոմետր** (< հուն. baros – ծանրություն և ... *մետր*), 1. մթն. ճնշման չափման սարք: Մադիկ. (հեղուկ.) Ճ–ում մթն. ճնշումը չափում են վերևից զոդված և բաց ծայրով սնդիկով լի անոթի մեջ ընկղմված խողովակում սնդիկի սյան բարձր–յամբ: Մնդիկ. Ճ–ներն առավել ճշգրիտ սարքերն են: Դրանք տեղակայում են օդերևութաբան. կայաններում և դրանցով ստուգում են այլ տեսակների՝ աներոիդի և բարձրաչերմաչափի աշխ–ը:

ՃՆՇԱՎԵՐԼՈՒԾԻՉՆԵՐ, **բարոռեցեպտորներ** (< լատ. baros – ծանրություն և *ընկալիչներ*), արյան անոթների պատերի զգացող նյարդ. վերջույթները: Ընկալում են արյան ճնշման փոփոխությունները և ռեֆլեքսորեն կարգավորում նրա մակարդակը:

ՃՆՇՈՒՄ, մի մարմնի՝ մյուսի մակերևույթին ուղղահայաց ազդող ուժերի ինտենսիվությունը բնութագրող ֆիզ. մեծություն: Մակերևույթի վրա ուժերի հավասարաչափ բաշխման դեպքում Ճ. մակերևույթի ցանկացած մասում՝ $P = F/S$, որտեղ S–ը այդ մասի մակերեսն է, F–ը՝ ուղղահայաց կիրառված ուժերի գումարը: Ճ. չափում են Պասկալներով (*Պա*), մթն–ներով (*մթն.*), *մմ* սնդ. ս–ով ևն:

ՃՆՇՈՒՄ ԼՈՒՅՍԻ, ճնշում, որը լույսը գործադրում է անդրադարձնող կամ կլանող մարմինների (նաև մասնիկների), առանձին մոլ–ների վրա: Լույսի ճնշման վերաբերյալ վարկածն առաջինն արտահայտել է Յ. *Կեպլերը* (1619)՝ Արեգակի մոտով թռչող գիսավորների պոչերի թեքվածությունը բացատրելու համար: Խոշորաչափ մարմինների վրա ազդող արեգակն. ճառագայթման ճնշումն առաջինը փորձով հայտնաբերել և չափել է Պ. Ն. *Լեբեդևը:* Լազերների ստեղծումից հետո հնարավոր է դարձել ճառագայթը կիզակետել լուս. ալիքի երկ–յան կարգի չափերով բծի վրա և ստեղծել Ճ. լ., որն ունակ է առանձին միկրոմասնիկը պահել տեղում կամ նույնիսկ տեղափոխել և արագացնել այն:

ՃՆՇՈՒՄ ՁԱՅՆԻ, միջին լրացուցիչ ճնշում, որին ենթարկվում է ձայն. դաշտում տեղակայված մարմինը: Բնութագրվում է մարմնին ձայն. ալիքի հաղորդած իմպուլսով: Օգտագործում են ձայնի ինտենսիվության բացարձակ արժեքը չափելու համար:

ՃՇԳՐՏՈՒԹՅԱՆ ՉԱՓ, պատահական մեծության արժեքների ցրման բնութագիրը *մաթեմատիկական վիճակագրությունում* և *հավանականությունների տեսությունում*՝ h, որը 6 *քառակուսային շեղման* հետ կապված է

$$h = 1/6\sqrt{2}$$ հավասարումով:

ՃՇԳՐՏՈՒԹՅՈՒՆ, 1. (տեխ.) շարժընթացի, առարկայի հարաչափի իրական արժեքի՝ նրա անվանական արժեքին մոտեցման աստիճանը: Տարբերում են մեխ. մշակման, մեխանիզմների, ԱԿՀ–ի չափման Ճ–ներ: 2. **Չափման Ճ.**, չափման բնութագիր, որն արտացոլում է նրա արդյունքների մոտ լինելը չափվող մեծության իրական արժեքին: Թվապես R_o չափումների հարաբեր. սխալի հակադարձն է. այսպես, երբ $R_o = \pm 10^{-5}$, չափման Ճ. = 10^5: 3. Չափի և չափիչ գործիքի Ճ. չափի արժեքի և չափիչ գործիքի ցուցմունքի մոտ լինելու աստիճանը իրական արժեքի մեծությունն է, որը վերարտադրվել է չափով կամ չափվել է սարքով:

ՃՇՄԱՐԻՏՅԱՆ Ստեփան Արտեմի (1909–1978), առողջապ–յան կազմակերպիչ: Բժշկ. գիտ. թեկնածու (1940): 1940–45–ին՝ ՀԽՍՀ առժողկոմ: ՀՄՊ–ի տարիներին ՀԽՍՀ–ում կազմակերպել է 29 տարհանման հոսպիտալներ: 1945–66–ին աշխատել է ՀԽՍՀ առժողկոմատի, ապա՝ ԱՆ տարբեր բուժ. հիմնարկներում, 1966–ին՝ փորձառ. կենսբ–յան ինստ–ի հիմնադիրտնօրենն: ՀԽՍՀ ԱՆ գլխ. ֆիզիոթերապևտ և հատուկ պոլիկլինիկայի գլխ. բժիշկ:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ, գիտելիքի համապատասխանությունն իրականությանը, փորձի և տես. ճանաչողության օբյեկտիվ բովանդակությունը: Փիլ–յան պատմության մեջ Ճ. հասկացվել է որպես գիտելիքի համապատասխանություն իրերին (Արիստոտել), իդեալ. օբյեկտների հավերժ և անփոփոխ բացարձակ հատկություն (Պլատոն, Օգոստինոս), մտածողության համապատասխանություն սուբյեկտի զգայություններին (Դ. Հյում), մտածողության համաձայնություն ինքն իր, իր ապրիորի ձևերի հետ (Ի. Կանտ): Ժամանակակից տրամաբանության և գիտ–յան մեթոդաբանության մեջ Ճ–յան՝ դասական մեկնաբանությունը գիտելիքի համապատասխանությունն իրականությանը. լրացվում է «ճշմարտանմանություն» հասկացությամբ, որը վարկածների ու տեսությունների ճշմարտացիության և, համապատասխանաբար, սխալականության աստիճանն է:

ՃՈՃԱՀԱՎ (Remizidae), ճոճահավերի ընտանիքի թռչուն: Նստակյաց է: Մարմնի երկ.՝ 11, թևերի բացվածքը՝ 16–17 *սմ*, կ. զ.՝ մինչև 12 *գ*: Փոքրամարմին է: Ապրում է գետերի երկայնքով տարածված ուռուտներում, եղեգնուտներում, բարդիների վրա: Մնվում է միջատներով: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՃՈՃԱՆԱԿ, 1. ներքևում ծանրության կենտրոն ունեցող տատանվող ձող, որի վերևի ծայրն ամրացված է անշարժ կետում: 2. (Մաթ.) *ծանրության ուժի* ազդեցությամբ տատանվող *նյութական կետ*: 3. (Ֆիզ.) մարմնի ծանրության կենտրոնով չանցնող անշարժ հորիզոն. առանցքի շուրջը ծանրության ուժի ազդեցությամբ տատանումներ կատարող մարմին: 4. Իր առանցքի շուրջը հավասարաչափ շարժվող գրպանի և ձեռքի ժամացույցների ընթացքը կարգավորող անիվ:


ՃՈՃԱՆԱԿԱՎՈՐ ԺԱՄԱՑՈՒՅՑ, որպես ընթացքի կարգավորիչ՝ *ճոճանակ* ունեցող ժամացույց (ճոճանակի փոքր տատանումները հավասարատև են): Հայտնաբերել է Ք. Հյուգենսը (1657): Ժամանակակից առավել ճշգրիտ (աստղագիտ.) Ճ. ժ–ի օրվա ընթացքի միջին ճշտությունը 5×10^{-4} *վ*–ից մեծ չէ:

ՃՈՆՔԱՋԵ Դանիել Գեորգիի (1830–1860), վրացի գրող: Հայտնի է «Սուրամի ամրոցը» (1859, կինոնկար՝ 1984, ռեժ.՝ Սերգեյ Փարաջանով) վիպակը, որտեղ բողոքել է ճորտատիր. կարգերի, միապետության դեմ:

ՃՈՇԱՆ, պաշտպան. զրահ՝ կուրծքը, որովայնը և մեջքը պաշտպանելու համար: Սկզբում պատրաստվել է խեղ–ի կաշվից, բրոնզե վահանիկներով և գնդագլուխ մեխերով երեսպատված կաշվե հյուսվածքից, հետագայում՝ նաև մետաղե թիթեղներից և օղակներից: Հայաստանում հնագույն Ճ–ները գտնվել են Փարվանա

լճին մերձակա լ–անցքում և Գոլովինոյում (մ. թ. ա. VIII–VII դդ.):

ՃՈՊԱՆ, պողպատե լարերից, թելերից, սինթետիկ կամ բուս. (կանեփի, բամբակաթղթի) մանրաթելերից պատրաստված ճկուն շինվածք: Ըստ պատրաստման եղանակի՝ լինում են ոլորած (գալարուն), չոլորած, հյուսած ևն:



Ոլորած ճոպանի սխեմա.
1. մետաղալար, հյուսք,
2. փունջ (պարուրաճոպան),
3. մետաղաճոպան,
4. կաբելային ճոպան

ՃՈՊԱՆՈՒՂԻ, բեռների և ուղևորների փոխադրման համար նախատեսված ճոպան. քարշով փոխադր. կառույց, որտեղ վագոնիկները, վագոններն ու նստարանները տեղափոխվում են հենարանների միջև ձգված ճոպանով: Մարդատար Ճ–ու թողարկման ունակությունը մինչև 2000 մարդ/*ժ* է և ավելի, իսկ բեռնատարինը՝ մինչև 1000 *տ/ժ*, վերելքի անկյունը՝ մինչև 50°: ՀՀ–ում գործում են Ծաղկաձորի, Ձերմուկի և Տաթևի Ճ–ները:

ՃՈՐՈՒԽ, Ակամսիս, գետ: Սկիզբ է առնում Հայկ. լ–աշխարհի համանուն լ–շղթայի Մեսջիտ լ–գագաթի հս–արմ. լանջից: Երկ.՝ 438 *կմ*, ավազանը՝ 22 հզ. *կմ*^{2}, ջրի ծախսը՝ 285 *մ*^{3}/*վ*: Բաթումի մոտ թափվում է Սև ծով: Խոշոր վտակներն են Օլթին, Լորին, Աջարիս Ծղալին: Լաստառաքելի է:

ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, ավատատիրական իրավունք, ավատատիր. պետ. իրավ. նորմերի համակարգ, որով կարգավորվել են կալվածատերերի ու նրանցից անձն. կախում ունեցող գյուղացիների հարաբերությունները: Ճորտ գյուղացին իրավունք չուներ հեռանալու իր տիրոջից, պարտավոր էր նրա համար կատարել կոռ ու բեգար, վճարել բահրա: Ըստ Ճ. ի–ի՝ կալվածատերն իր ճորտի նկատմամբ ուներ ոչ լրիվ սեփականության իրավունք, նրան կարող էր վաճառել, նվիրաբերել, ծեծել, աքսորել, բայց սպանելու իրավունք չուներ: Արմ. Եվրոպայում Ճ. ի. վերացվել է XVI–XVIII դդ–ում, Արլ. և Կենտր. Եվրոպայում՝ XVIII–XIX դդ–ում: Ռուսաստանում Ճ. ի. օրենքով սահմանվել է 1497–ին, վերացվել 1861–ին: Հայաստանում Ճ. ի. դաս. դրսևորում չի ունեցել: Տես նաև *Ֆեոդալիզմ*:

ՃՁԱՆ ԿԱՐԱՊ (Cygnus cygnus), բադերի ընտանիքի թռչուն: Ձմեռող է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 145–160, թևերի բացվածքը՝ 218–243 *սմ*, կ. զ.՝ 6,7–7 *կգ*: Թռչում է վիզը և ոտքերը ձգած, թևերն անձայն թափահարելով: Ապրում է տարբեր ջր. տարածքներում, սնվում ջր. բույսերով և անողնաշարներով, ՀՀ–ում՝ Սևանա լճի ավազանում և Արարատյան դաշտի ձկնաբուծ. լճակներում: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՃՊՈՒՈՒՆԵՐ (Odonata), միջատների կարգ: Խոշոր, գիշատիչ միջատներ են: Մարմնի երկ.՝ 1,4–12, թևերինը՝ 1–9 *սմ*: Թևերը թափանցիկ են, խիստ ջղավորված: Հայտնի է շուրջ 4,5 հզ. տեսակ, ՀՀ–ում՝ 52. առավել տարածված են սլաքիկները, գեղուհիները, թիակիկները՝ հատկապես լեռն. ուղղաձիգ գոտիներում, մասամբ՝ հվ. շրջաններում: Սնվում են միջատներով, ճանճերով, մոծակներով, երբեմն՝ շերեփուկներով ու մանրաձկներով: Կարող են տարածել ընտանի թռչունների վտանգավոր հիվանդություն (պրոտոզոնիմոզ):

«ՃՈՒԱՔԱՉ», բանասիր., կրոն. պարբ. (1858–62, Մոսկվա, 1858–ին և 1862–ին՝ «Ժողովածու»): Խմբ–հրտ–ներ՝ Մսեր Մսերյան, Զարմայր Մսերյան:

ՃՈՒԿՆԵՐ (Gryloidea), ուղղաթև միջատների կարգի վերնաընտանիք: Հայտնի է 2 հզ. տեսակ, ՀՀ–ում՝ 16: Մարմինը գլանաձև է, երբեմն՝ գնդաձև, բեղիկները սովորաբար մարմնից երկար են: Արուները վերնաթևերի վրա ունեն ձայնարձակող ապարատ, որի օգնությամբ գիշերները «երգում են»: Ամենակեր են: Աշակաբույսերին մեծ վնաս են պատճառում իշախառնիչը և տափաստան. ճռիկը:

ՃՒՃՈՒՈՒԿ, 1. (Cerastium), **եղջերաբույս, կորունկ**, մեխակազգիների ընտանիքի միամյա կամ բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 100 տեսակ՝ տարածված ամբողջ երկրագնդում, հիմնականում՝ Եվրասիայում, առավելապես՝ լեռնեղրում: ՀՀ–ում հանդիպում է 18(19) տեսակ՝ եռասռնակ, անտառ., եղանաձև, աղբային, ծիրանի ևն՝ գրեթե բոլոր մարզերում: Հիմնականում մոլախոտ է: Մեղրատու է և գեղազարդիչ: 2. (Lactarius vellereus), **չոր կաթնասունկ**, բազիդիավոր սնկերի կաթնասնկեր ցեղի տեսակ: ՀՀ–ում հանդիպում է Տավուշի մարզում: Միկոռիզազոյացնող է. համակեցության մեջ է մտնում ասեղնատերև և սաղարթավոր ծառատեսակների հետ: Գլխարկը չոր է, թավշանման: Ուտելի է, սննդի մեջ օգտագործում են թթու դրած:

ՃՐԱԳԱԼՈՒՅՑ, քրիստ. տոների՝ *Սուրբ Ծնունդին* և *Զատկին* նախորդող օրը: Ճ. նշանակում է ճրագ լուցանել, այսինքն՝ վառել: Այդ օրերին, ըստ հատուկ արարողակարգի, վառում են տաճարի ջահերն ու կանթեղները և վառվող մոմեր բաժանում ժողովրդին, որից հետո մատուցվում է Սուրբ *Պատարագ*:

ՃՐԱԳԱԽՈՏ (Orobanche), **կաղնձի, առյուծախոտ**, ճրագախոտազգիների ընտանիքի միամյա կամ բազմամյա քլորոֆիլազուրկ, մակաբույծ խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 150 տեսակ՝ բարեխառն և մերձարևադարձ. շրջաններում, ՀՀ–ում՝ 38: Վնասատու մոլախոտ է: Մակաբուծում է մշակաբույսերի արմատներում:

ՃՈՒԼԱՐՑՅԱՆ Սիմոն (1811–1884), բանահավաք, բանասեր: Վ.ետՄՄ անդամ: Խմբագրել ու հրատարակել է «Առածք ազգայինք» (1880, համառոտած թարգմանություն ֆրանս. և անգլ.՝ 1888–ին) հայկ. և «Տաճկական առածք» (1882) թուրք. առած–ասացվածքների ժող–ների:

ՃՈՒՂՈՒՐՑԱՆ Ավետիս Սմբատի (1898–1981), մանկավարժ, մեթոդիստ: Մանկավարժ. գիտ. թեկնածու (1952): ՀԽՍՀ վաստ. ուսուցիչ (1945): Լիպարիտ *Ճուղուրյանի* եղբայրը: Հեղինակ է երեխաների կրթության և դաստիարակության հարցերին վերաբերող աշխ–ների:

ՃՈՒՂՈՒՐՑԱՆ Արմեն Գևորգի (1960), տնտեսագետ: Տնտեսագիտ–յան դ–ր (2002): Աշխ–ները վերաբերում են հաշվապահ. հաշվառման, ֆին. վերլուծության, աուդիտի և կրթության կառավարման խնդիրներին:

ՃՈՒՂՈՒՐՑԱՆ Լիպարիտ Սմբատի (1905–1981), ճարտարագետ–ֆիզիկոս, փոխգնդ.: Ավետիս *Ճուղուրյանի* եղբայրը: 1955–81–ին աշխատել է Չափագիտ–յան ՀամԳՀԻ–ում (Լենինգրադ): Ստեղծել է հրետան. և հրթիռ. զենքի փորձարկման սարքեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1947):

ՃՈՒՂՈՒՐՑԱՆ Հարություն Գրիգորի (1864–1938), գյուղագիր: Հեղինակ է «Սոռացուած աշխարհ» (հ. 1–3, 1895–96) պատմվածքների ժող–ի, «Աղա սուրբ Սարգիսը եւ Մալաք տատի հաւատը» (1899), «Աղքատի հալը» (1902), «Չատոյի բախտի անիւը» (1908, տպաքանակը ցար. գրաքննությունը ոչնչացրել է) և այլ պատմվածքների, «Շիրինանց Նախշունը» (1911) վեպի:

ՃՈՒՌԱԿԱՆՄԱՆ ՇԱՀՐԻԿ (Silvia nisona), *շահրիկների* ընտանիքի թռչուն: Բնադրող–չվող է, հազվագյուտ հանդիպող: Մարմնի երկ.՝ 15,5, թևերի բացվածքը՝ 23–27 *սմ*, կ. զ.՝ 21–25 *գ*: Խոշոր շահրիկ է՝ դարչնամոխրագույն փետրավորմամբ: Թաքնված թռչուն է, երկչոտ, հաճախ բնադրում է շամփրուկների հարևանությամբ, ճանաչվում է արուի բարձր ձայնով: Ապրում է արևկող անտառեզրերին, լ–լանջերի մացառուտներում: Սնվում է անողնաշարներով, հատապտուղներով:

ՃՈՒՌԱԿՆԵՐ (Accipithridae), բազեանմանների կարգի գիշատիչ թռչունների ընտանիք: Մեծամասնությանը բնորոշ են կլորավուն ծայրով լայն թևերը: Հայտնի է 220 տեսակ՝ տարածված լայնորեն: ՀՀ–ում հանդիպում է 27 տեսակ՝ անգղներ, արծիվներ, լորաճուռակ, եվրոպ. ճնճղաճուռակ, թավշատ ճուռակ, մեծ ճուռակ, կրետակեր ևն: Շատ տեսակներ հազվագյուտ են. պահպանվում են:

ՃՔՃՔԱՆ ՄՐՏԻՄՆ (Anas querquedula), բադերի ընտանիքի թռչուն: Նստակյաց է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 37–41, թևերի բացվածքը՝ 60–63 *սմ*, կ. զ.՝ 280–550 *գ*: Ապրում է լճերում, ճահճուտներում, գետերում: Սնվում է ջր. անողնաշարներով: Սևանի մակարդակի նվազման և Գիլլի լճի չորացման հետևանքով թվաքանակը կրճատվել է: Մարզ. և սիրող. որսաթռչուն է:

Մ

Մ, հայ. այբուբենի 20–րդ տառը, անվանումը՝ մեն: Ունի ***գրչագիր***, ***երկաթագիր***, ***բոլորգիր***, ***շղագիր***, ***նուրբգիր*** տառատեսակները: Հայ–ի երկշրթնային ձայնորդ ռնգային բաղաձայն հնչյուն (հնչույթ) է: Թվային արժեքը՝ 200:

ՄԱ, աստվածուհի փոքրասիական դից–յան մեջ, աստվածամայր: Մ–ի պաշտամունքը մոտ է ***Կիբելեի*** պաշտամունքին: Մ. թ. ա. I դ–ից երկրպագել են Հռոմում:

ՄԱԱԴԻ (Բուտո–Սաադի, Ներքին Եգիպտոս), մ. թ. ա. IV հզ–ամյակի բնակավայր և գերեզմանատեղի Կահիրե ք–ի տարածքում, հնագիտ. մշակույթի առանձնացման չափօրինակ: Մ–ի մշակույթը հարաբերակցվել է Հս. Աֆրիկայի և ***Լևանտի*** ավանդույթների հետ, ավելի ուշ տարրալուծվել է հինեգիպտ. քաղաքակրթության մեջ:

ՄԱԱԶԵԼ (Maazel) Լորին (1930–2014), ամերիկացի դիրիժոր, ջութակահար: 1988–90–ին՝ Ֆրանսիայի ազգ., 1993–2002–ին՝ Բավարիայի ռադիոյի սիմֆ., 2002–09–ին՝ Նյու Յորքի սիմֆ. նվագախմբերի գլխ. դիրիժոր: «Կարմենն», «Օթելլո» ֆիլմ–օպերաների բեմադրող–դիրիժորը: «Գրեմմի» (2004) և այլ մրց–ներ:

ՄԱԱՆԵՐ, հարստություն Լիբանանում XII–XVII դդ–ում: Հիմնադրել է Սաան ալ–Այյուրին: 1516–ին հարստության ներկայացուցիչ Ֆահր ադ–Դին I Մ. (մահ.՝ 1544) ճանաչել է Օսմ. սուլթանի գերապետությունը: Մ. առավել ուժեղացել են Ֆահր ադ–Դին II–ի օրոք (ընդմիջումով՝ 1590–1633):

ՄԱԱՍՏՐԻԽՏԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, պայմանագիր ***Եվրոպական Միության*** մասին, ստորագրվել է 1992–ին Նիդեռլանդների Մաաստրիխտ ք–ում:

ՄԱԱՏ (Ամաատ), արդարության, ճշմարտության, տիեզ. ներդաշնակության և կարգուկանոնի աստվածուհին հինեգիպտ. դից–յան մեջ: ***Ռա*** աստծու դուստրը, ***Թոթի*** կինը: Պատկերվել է նստած կնոջ կերպարանքով՝ ջայլամի փետուրը՝ գլխին:

ՄԱԲԼԻ (Mably) Գաբրիել Բոննո դը (1709–1785), ֆրանսիացի լուսավորիչ, պատմաբան, փիլ., ուտոպ. կոմունիզմի ներկայացուցիչ: Է. Բ. դե ***Կոնդիլյակի*** եղբայրը: Իդեալ. հասարակարգի հիմքը համարել է բարիքների համընդհանուր տնօրինումը՝ ոչ մեծ հողագործ. համայնքները:

ՄԱԲՈՒՅԱՆԵՐ (Eutropis), սցինկների ընտանիքի տրախիլեպիս ցեղի մողեսներ: Երկ.՝ մինչև 22 ***սմ***: Հայտնի է 90 տեսակ: Արլ. Այսրկովկասում և Միջին Ասիայում հանդիպում է ***ոսկեգույն տրախիլեպիսը***: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՄԱԳԱԴԱՆ, ք–նվինգստ ՌԴ–ում՝ Օխոտի ծովի Նագաևի ծովախորշի ափին, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 99 հզ. (2009): Հիմնադրվել է 1930–ական թթ–ին:

ՄԱԳԱԴԱՆԻ ՄԱՐԶ, վտմ ՌԴ Հեռավորարլ. դաշն. օկրուգի կազմում: Տարածքը՝ 462,5 հզ. ***կմ²***, բն.՝ 163 հզ. (2009): Ունի 8 շրջան, 2 քաղաք և 28 քտա: Վարչ. կենտրոնը՝ ***Մագադան:*** Կազմավորվել է 1953–ին:

ՄԱԳԱԶԱԹ, ***պերգամենտ***, կենդանիների (հիմնականում՝ հորթերի) հատուկ մշակված կաշի, օգտագործվել է որպես գրանյութ՝ ***թղթի*** հայտնագործումից առաջ: Ստեղծվել է Փոքր Ասիայի Պերգամոն ք–ում (այստեղից էլ՝ անվանումը): Փոխարինել է ***պապիրուսին***:

ՄԱԳԴԵԲՈՒՐԳ (Magdeburg), ք. Գերմանիայում, նվինգստ Էլբայի ափին: Սաքսոնիա–Անհալտ երկրի վարչ. կենտրոնը: Բն.՝ 235,1 հզ. (2010): Կան պատմամշակութ. թանգարան, վաղգոթ. տաճար (XIII–XVI դդ.): Հայտնի է 805–ից:

ՄԱԳԴԵԲՈՒՐԳՅԱՆ ԿԻՍԱԳՆԴԵՐ, իրար կիպ կպած մետաղե 2 կիսագնդեր, որոնք դժվար է իրարից անջատել, եթե նրանց միջև եղած տարածությունից հանված է օդը: Պատրաստել է Օտտո Գերիկեն ***Մագդեբուրգում*** (այստեղից՝ անվանումը) 1654–ին, որով ցուցադրել է մթն. ճնշման գոյությունը:

ՄԱԳԵԼԱՆ, ***Մագալյայնշ*** (Magalhães), Ֆեռնան (մոտ 1480–1521), պորտուգալացի ծովագնաց, որը կատարել է 1–ին շուրջերկրյա նավարկությունը: 1505–12–ին մասնակցել է պորտուգ. արշավախմբերին, 2 անգամ հասել ***Մալակկա*** թ–կղզի: 1519–1521–ին ղեկավարել է 5 նավից կազմված իսպ. արշավախումբը: 1520–ին հասել է ***Լա Պլատայի*** գետաբերան, հայտնագործել Սան Մաթիաս և Սան Խորխե ծոցերը, կտրել Խաղաղ օվկ–ը, հասել Ֆիլիպինյան կղզիներ, որտեղ սպանվել է տեղացիների հետ ընդհարման ժամանակ: Մ–ի նավարկությունը վերջնականապես ապացուցել է երկրի գնդաձևությունը և Համաշխ. օվկ–ի առկայությունը:

ՄԱԳԵԼԱՆԻ ԱՄՊԵՐ, ***Մեծ և Փոքր***, մեր Ծիր Կաթին Գալակտիկայի արբանյակի գաճաճ գալակտիկաներ: Անզեն աչքով տեսանելի են Հվ. կիսագնդի երկնքում (համապատասխանաբար՝ ***Ոսկե ձկնիկ*** և ***Սղոցակռուց*** համաստեղություններում): Դրանց հայտնաբերումը վերագրում են Ֆ. ***Մագելանի*** շուրջերկրյա ճանապարհորդության մասնակիցներից մեկին (այստեղից՝ անվանումը): 1984–ի փետր–ին Մագելանի Մեծ ամպում բռնկվել է ***գերնոր աստղ***, որը երևացել է անզեն աչքով:

ՄԱԳԵԼԱՆԻ ՆԵՂՈՒՑ, Հվ. Ամերիկա մայրցամաքի և Հրո Երկիր կղզեխմբի միջև: Ափերը պատկանում են Չիլիին: Միացնում է Ատլանտ. և Խաղաղ օվկ–ները: Երկ.՝ 575 ***կմ***, առլգն լայն.՝ 2,2 ***կմ***, նվզգն խոր. նավարկուղում՝ 19,8 ***մ***: Գլխ. նվինգստը՝ Պունտա Արենաս (Չիլի): Հայտնագործել է Ֆ. ***Մագելանը*** 1520–ին:

ՄԱԳԻԴՈՄՈՆ Մարկ Պավլովիչ (1901–1954), ռուս. կինոօպերատոր: Աշխատել է ռեժ–ներ Ա. Դ. Գոլոմյայի («Մեծ առօրյաներ», 1931), Դ. Վերտովի («Երեք երգ Լենինի մասին», 1934), Յ. Ա. Պրոտազանովի («Անօժիտը», 1937), Մ. Կ. Կալատոզովի («Դատապարտյալների դավադրությունը», 1950) և ուր. հետ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949, 1951):

ՄԱԳԻԼՆԵՐ, ***ճանկեր***, մաշկի եղջերային գոյացություններ ցամաք. ողնաշարավոր կենդանիների և թռչունների մատնե–րի ծայրերին: Օգտագործում են որպես օժանդակ օրգան տեղաշարժման ժամանակ, նաև որպես պաշտպանման և հարձակման զենք:

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ, 1. բուհ. կրթության 2–րդ աստիճանը (5–6–րդ կուրսեր)՝ ***բակալավրիատից*** (1–4–րդ կուրսեր) հետո: 2. Պետ. պաշտոն Հին Հռոմում մ. թ. ա. VI դ–ի վերջին:

ՄԱԳԻՍՏՐՈՍ (լատ.՝ magister – պետ, ուսուցիչ), գիտ. աստիճան, տրվում է ***մագիստրատուրան*** ավարտած և տվյալ գիտ. ճյուղից բանավոր քննություն հանձնած ու հրապարակայնորեն ատենախոսություն պաշտպանած անձանց: ՀՀ–ում ներդրվել է 1990–ական թթ–ի կեսերին: Միջին դարերում Մ–ի աստիճան շնորհվել է ***«յոթ ազատ արվեստներ»*** դասավանդողներին, հետագայում՝ համալսարանների փիլ. ֆակ–ների շրջանավարտներին:

Մ. հայ իրականության մեջ օգտագործվել է նաև որպես պատվանուն, օր.՝ Գրիգոր Մագիստրոս Պահլավունի, ևն:

ՄԱԳԼՅՈՂ ԲՈՒՅՍԵՐ, վեր բարձրացող և հատուկ հարմարանքների օգնությամբ որևէ հենարանի ամրացող բույսեր. պատկանում են ***լիաններին***: Ըստ ամրանալու ձևի՝ բաժանվում են 3 խմբի՝ կառչող (մասրենու շատ տեսակներ, մոշ, կաթնախոտ), արմատների օգնությամբ վեր բարձրացող (բաղեղ, վանիլ, սև պղպեղ ևն) և բեղիկակիր (լոբազգիներ, խաղող ևն):

ՄԱԳԼՅՈՂ ՊԱՐԿԱՎՈՐՆԵՐ (Phalangeridae), **պոսումներ**, պարկավորների կարգի կաթնասունների ընտանիք: Սարմնի երկ.՝ 6–80 ***սմ***, մեծամասնության պոչը երկար է: Հայտնի է 31 տեսակ, այդ թվում՝ կուսկուս–

նները: Որոշ տեսակներ մորթու արդյունագործ. օբյեկտ են: 4 տեսակ գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՄԱԳՄԱ (հուն.՝ magma – խմոր, թանձր քսուք), հիմնականում սիլիկատ. կազմի հրահեղուկ զանգված է. առաջանում է Երկրի խոր հորիզոններում: Սովորաբար Մ. մեծ թվով քիմ. տարրերի միացությունների բարդ լուծույթ է, որոնց մեջ գերակշռում են O_2, Si, Al, Fe, Mg, Ca, Na և K տարրերը: Երբեմն Մ–ում լուծվում կամ լուծված են լինում մինչև մի քանի տոկոս ցնդող բաղադրիչներ: Հրաբխ. մարզերում Մ., հասնելով Երկրի մակերևույթին, արտավիժում է *լավայի* տեսքով, հրաբուխների խառնարաններում առաջացնում էքստրուզիվ մարմիններ կամ դուրս նետվում գազերի հետ՝ մանրատված նյութի ձևով:

ՄԱԳՄԱՅԻԿ ԱՊԱՐՆԵՐ, հրային ապարներ, առաջացել են հրահեղուկ մագման սառչելու և բյուրեղանալու հետևանքով: Մագման կարող է սառչել ինչպես Երկրի խոր հորիզոններում, այնպես էլ Երկրի մակերևույթին՝ արտավիժելուց հետո: Մ. ա., ըստ սիլիկահողի պարունակության, լինում են՝ գերհիմքային (SiO_2–ը՝ < 44 %), հիմքային (40–53 %), միջին թթվության (53–64 %), թթու (65–78 %): Մ. ա. լայնորեն տարածված են ՀՀ–ում:

ՄԱԳՆԵԶԻՏ [Թեսալիայի (Հունաստան) Մագնեսիա մարզի անունով], կարբոնիտների դասի միներալ՝ $MgCO_3$: Պարունակում է 47,82 % MgO և 52,18 % CO_2: Որպես իզոմորֆ խառնուրդներ՝ մասնակցում են Fe, սակավ՝ Mn և Ca տարրերը: Բյուրեղ. համակարգը տրիկոնային է: Անգույն է, սպիտակ, գորշ, դեղին, շագանակագույն: Կարծր.՝ 4–7, խտ.՝ 3 *գ/սմ³*: Մ. ունի ջրաջերմ., ներծծանցում. և սակավ՝ նստվածք. ծագում: Կիրառվում է մետաղաձուլության, շին–յան, ռետինի, թղթի արդ–յան մեջ, ինչպես նաև Mg–ի ստացման համար:

ՄԱԳՆԵԶԻՈՒՄ (Magnesium), տարրերի պարբեր. համակարգի II խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 12, ա. զ.՝ 24,305: Սպիտակ, արծաթափայլ, թեթև, ամուր մետաղ է, խտ.՝ 1,74 *գ/սմ³*, $t_{հալ.}$՝ 650°C: Մ. օդում պատվում է օքսիդի պաշտպանիչ շերտով և փայլազրկվում: Օդում տաքացնելիս (600–650°C) բոցավառվում է, այրվում կուրացնող սպիտակ բոցով՝ առաջացնելով *մագնեզիումի օքսիդ*: Երկրակեղևում տարածվածությամբ 8–րդ տարրն է: Հայտնի միներալներն են մագնեզիտը, դոլոմիտը, կառնալիտը: Օգտագործում են թեթև համաձուլվածքների արտադր–յան մեջ, մի շարք մետաղների թթվածնազերծման և ծծմբազերծման, միացություններից Hf, Ti, U, Zr և այլ մետաղների վերականգնման համար, արկերի և հրթիռների լուսավորող ու բոցավառող բաղադրությունների բաղադրիչ է:

ՄԱԳՆԵԶԻՈՒՄԻ ՀԱՄԱՁՈՒԼՎԱԾՔՆԵՐ, համաձուլվածքներ, որոնց հիմն. բաղադրիչը *մագնեզիումն* է: Առավել ամուր և կրակակայուն Մ. հ. մշակվում են մագնեզիում–մետաղ համակարգի հիմքի վրա: Մ. հ. բաժանվում են 2 խմբի՝ **ձուլման** համաձուլվածքներ՝ ձևավոր ձուլվածքների արտադր–յան համար, և **ձևափոխվող** համաձուլվածքներ՝ մամլումով, գլոցումով, կռումով ու դրոշմումով կիսաարտադրանքների արտադր–յան համար: Կիրառում են ավիացիայում, հրթիռաշինության, ավտոմոբիլ. արդ–յան և լուսանկարչ. ու կինոսարքավորումների արտադր–յան մեջ:

ՄԱԳՆԵԶԻՈՒՄԻ ՍՈՒԼՖԱՏ, $MgSO_4$, մագնեզիումի ծծմբաթթվական չեզոք աղը: Անգույն բյուրեղ. նյութ է: Բնության մեջ հանդիպում է կիզերիտ՝ $MgSO_4 \cdot H_2O$, էպսոմիտ՝ $MgSO_4 \cdot 7H_2O$ (դառը աղ), միներալների ձևով: Կիրառում են ցեմենտների արտադր–յան, գործվածքեղենի (խածանություն), թղթի (լցանյութ) արդ–յան մեջ, որպես պարարտանյութ, իսկ բժշկության մեջ՝ որպես թուլացնող միջոց (անգլ. կամ դառը աղ անվանումով):

ՄԱԳՆԵԶԻՈՒՄԻ ՕՔՍԻԴ, **թրծած մագնեզիում**, MgO, անգույն բյուրեղ. նյութ է, $t_{հալ.}$՝ 2825°C: Ստացվում է մագնեզիտի և դոլոմիտի թրծմամբ: Հիմնային օքսիդ է: Կիրառում են ցեմենտների, հրահեստ նյութերի, որպես լցանյութ՝ ռետինի արտադր–յան մեջ, նավթամթերքների մաքրման համար և բժշկության մեջ:

ՄԱԳՆԵԶԻՈՒՄՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, մետաղօրգ. միացություններ, որոնցում մագնեզիումի ատոմն անմիջականորեն միացած է ածխածնի ատոմին: Հայտնի են R_2Mg և RMgX (Գրինյարի ռեակտիվներ) տիպի Մ. ա., որտեղ R–ն օրգ. ռադիկալն է, X–ը՝ հալոգենը: Օգտագործում են այլ մետաղօրգ. և տարբեր օրգ. միացություններ ստանալու համար:

ՄԱԳՆԵՍԻԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ Մ. Թ. Ա. 190, տեղի է ունեցել Լիդիայի Մագնեսիա ք–ի մոտ: Հռոմ. կրկնակի պակաս զորքը հաղթել է Սելևկյան թագավոր Անտիոքոս III Մեծի զորքերին: Ճակատամարտից հետո վերականգնվել է Մեծ Հայքի, Ծոփքի, Փոքր Հայքի հայկ. թագավորությունների անկախությունը:

ՄԱԳՆԵՏԻՏ, **մագնիսական երկաթաքար**, միներալ, բարդ օքսիդ՝ $FeFe_2O_4$: Մեծ մասամբ առաջացնում է հոծ հատիկավոր, երիկամաձև, օոլիտային, դրուզայինագրեգատներ: Ուժեղ մագնիսական է: Սև է, փայլը՝ կիսամետաղական: Կարծր.՝ 5,5–6, խտ.՝ 5,2 *գ/սմ³*: Հանդիպում է երկնաքարերում, մագմատիկ ապարներում (գաբրոներ, նորիտներ, պիրոքսենիտներ), պեգմատիտներում: Երկաթի հանքանյութ է:

ՄԱԳՆԵՏՈՆ, *մագնիսական մոմենտի* չափման միավոր ատոմի, ատոմի միջուկի և *տարրական մասնիկների* ֆիզիկայում: Մագնիս. մոմենտը, որը պայմանավորված է ատոմում էլեկտրոնների ուղեծր. շարժմամբ և դրանց ***սպինով***, չափվում է Բորի Մ–ով՝ $\mu_B = eħ/2m_ec \approx 9{,}2741 \cdot 10^{-24}$ Ջ/Տլ, որտեղ ħ–ը Պլանկի հաստատունն է, e–ն՝ տարր. էլ. լիցքը, c–ն՝ լույսի արագությունը: Նուկլոնների և միջուկների մագնիս. մոմենտները չափվում են միջուկ. Մ–ով, միավոր. $\mu_N = eħ/2m_pc \approx 5{,}05078 \cdot 10^{-27}$ Ջ/Տլ, որտեղ m_p–ն պրոտոնի զանգվածն է:

ՄԱԳՆԵՏՐՈՆ (< հուն. magnetis – մագնիս և ...*ոն*), էլեկտրավակուում. սարք, *սմ*–ի ընդգրկույթի էլեկտրամագնիս. ալիքների հզոր գեներատոր: Գործողությունը հիմնված է էլ. և մագնիս. խաչաձևած դաշտերում էլեկտրոնների արգելակման վրա: Օգտագործում են հիմնականում ռադիոտեղորոշման սարքավորումներում, նաև ԳՔՀ տաքացնող կայանքներում: Հզորությունը մինչև 10^4 *Վտ* է անընդհատ ռեժիմում, 10^7 *Վտ*՝ իմպուլսայինում:

ՄԱԳՆԻՄ (հուն.՝ Magnetis lithos – բառացի՝ Մագնեսիայի քար), ***մագնիսականությամբ*** օժտված, այսինքն՝ մագնիս. դաշտ ստեղծող մարմին: Իր մագնիս. դաշտի ազդեցությամբ ձգում կամ վանում է երկաթ, պողպատ, նիկել և այլ մետաղներ: Պատրաստում են մագնիս. երկաթաքարից, մագնիսակարծր նյութերից՝ պայտի, ձողի ձևով: Տես նաև *Գերհաղորդիչ մագնիս, Էլեկտրամագնիս, Հաստատուն մագնիս*:

ՄԱԳՆԻՍԱՄԱՁԱԳԱԿԱՆ ԷՖԵԿՏ, **Վիլարիի էֆեկտ**, մարմնի ձևախախտման ժամանակ նրա մագնիսացվածության փոփոխության երևույթը, որը պայմանավորված է մեխ. լարվածության ներգործությամբ, ֆեռոմագնիսի դոմենային կառուցվածքի փոփոխությամբ: Բացահայտել է Է. *Վիլարին* (1865):

ՄԱԳՆԻՍԱԳԻՐՈՍԿՈՊԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ, **գիրոմագնիսական երևույթներ**, մագնիսամեխ. երևույթներ, որոնք ցույց են տալիս մագնիսականության ատոմ. կրողների մագնիս. և մեխ. մոմենտների միջև կապի գոյությունը: Ֆեռոմագնիսների մեխ. մոմենտի ածն առաջացնում է լրացուցիչ մեխ. մոմենտ և հակառակը (*Էյնշտեյն–դե Հաազի էֆեկտ, Բառնեթի էֆեկտ*):

ՄԱԳՆԻՍԱԳԻՐՈՍԿՈՊԱՅԻՆ ՀԱՃԱԽՈՒԹՅՈՒՆ, **ցիկլոտրոնային հաճախություն**, հաստատուն մագնիս. դաշտի $\vec{H}$ լարվածությանն ուղղահայաց հարթության մեջ լիցքավորված մասնիկի (էլեկտրոն, պոզիտրոն, իոն ևն) պտտման հաճախությունը: Մ. հ. հավասար է $\Omega = eH/mc$, որտեղ e–ն էլ. լիցքն է, m–ը՝ մասնիկ. զանգվածը, c–ն՝ լույսի արագությունը:

ՄԱԳՆԻՍՍԳՐԻՉ, ժամանակի ընթացքում Երկրի մագնիս. դաշտի փոփոխությունների անընդհատ գրանցման սարք:

ՄԱԳՆԻՍԱԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ, հաղորդչի ρ տեսակարար էլ. դիմադրության փոփոխությունը մագնիս. դաշտի ազդեցությամբ՝ $\Delta\rho/\rho = (\rho_H - \rho)/\rho$, որտեղ ρ և ρ_H–ը տեսակարար էլ. դիմադրություններ են՝ դաշտի բացակայությամբ և H լարվածությամբ դաշտում: Մ–յան նշանը կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական: Մեծ Մ. հայտնաբերվել է մագնիս. կիսահաղորդիչներում: Օր.՝ Se–ի պակասորդով միասլկոգենիդում՝ EuSe–ում, ρ–ի մեծությունն ընկնում է 9 կարգով՝ H =10 կԷ մագնիս. դաշտի կիրառման դեպքում: Մի քանի *Էրպեդ* կարգի լարվածությամբ մագնիս. դաշտում մեծ Մ. է հայտնաբերվել (ավելի քան 50 %) արհեստականորեն ստեղծված Fe/Cr մագնիս. գերցանցերում:

ՄԱԳՆԻՍԱԿԱԼՈՐԻԱԿԱՆ ԷՖԵԿՏ (ֆիզ.), մագնիսանյութի թերմոդինամիկ. (ջերմ.) վիճակի փոփոխությունը նրա մագնիս. կարգավորվածության (մագնիս. վիճակ) աստիճանի փոփոխության դեպքում: Արտահայտվում է որպես նմուշի ջերմաստիճանի և էնտրոպիայի մագնիս. մասի փոփոխություն:


ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԱՆԻԶՈՏՐՈՊՈՒԹՅՈՒՆ, մարմինների մագնիս. հատկությունների (օր.՝ մագնիսացվածության) կախվածությունը նմուշում (մագնիսանյութում) ընտրված ուղղություններից: Բյուրեղի բյուրեղագիտ. առանցքների նկատմամբ կախվածությունն անվանում են բնական բյուրեղագիտ. Մ. ա.: Բացի այդ՝ Մ. ա. կարող է առաջանալ մագնիսաառաձգ. դեֆորմացիայի հետևանքով՝ արտաքին և ներքին լարումների առկա–

յությամբ (ուղղորդված Մ. ա.), նաև նմուշի ձևի անիզոտրոպիայի հետևանքով:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ, գիտ. հաստատություն, որտեղ գրանցում են երկրամագնիս. դաշտի վարիացիանե-րը, պարբերաբար չափում երկրամագ-նիս. դաշտի լարվածության բացարձակ արժեքները, կատարում տվյալների նախնական մշակում: Աշխարհում կան ավելի քան 200 Մ. ա-ներ, որոնց աշխ-ները համակարգում է Երկրամագնի-սականության և աերոնոմիայի միջազգ. ընկերակցությունը:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԱՍՏՂԵՐ, օժտված են ուժեղ մագնիս. դաշտերով (որոնց լար-վածությունը երբեմն հասնում է տասնյակ հգ. *Է*-ի՝ ~10^6 *Ա/մ*) և քիմ. կազմի անոմա-լիաներով:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԲԵՎԵՌ, մագնիսացված մարմնի (մագնիս) մակերևույթի մաս, որի վրա մագնիսացվածության վեկտորի ուղղահայաց բաղադրիչը տարբերվում է զրոյից (մակերևույթի այդ հատվածը հատում են մագնիս. դաշտի ուժագծե-րը): Մ. բ. անվանում են **հյուսիսային**՝ N (դրական), եթե նրանից դուրս են գալիս ուժագծեր, և **հարավային**՝ S (բացասա-կան), եթե այդ հատվածում ուժագծերը մտնում են մարմնի մեջ:



Մագնիսացած պողպատե ձողի մագնիսական բևեռները (N և S) և մագնիսական ուժագծերը

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԳԼԽԻԿ, սարք, որը մագնիս. մեծությունները (ինդուկցիա, հոսք) կամ նրանց փոփոխությունները փոխարկում է էլ. ազդանշանների կամ էլ. ազդանշանները՝ մագնիս. դաշտի փո-փոխությունների: Կազմված է մեկ կամ մի քանի փաթույթներով ֆեռոմագնիսե միջուկից, որոնց միջոցով Մ. գ-ում հա-րուցվում է մագնիս. դաշտ (տեղեկույթի գրանցման դեպքում) կամ ինդուկցվում է էլ. ազդանշան (վերարտադրման դեպ-քում): Մ. գ-ի և ձայնագրության կրիչի փոխազդեցությունն ապահովվում է մի-ջուկի բացակով:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ, էլ. ազ-դանշանների հաջորդականությամբ ներ-կայացված տեղեկույթի գրանցում, որը հիմնված է կրիչի (մագնիս. ժապավեն, սկավառակ ևն) մագնիս. շերտի առան-ձին տեղամասերի մագնիսացածության փոփոխության վրա: Կատարվում է ***մագ-նիսական գլխիկի*** միջոցով: Օգտագործ-վում է ձայնի, պատկերի (սև, սպիտակ ու գունավոր) և տարբեր տվյալների (թվային ու տառային տեսքով) գրանցման համար:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՏ, էլեկտրամագ-նիս. դաշտի մագնիս. բաղադրիչը. ֆիզ. դաշտ, որը մեխ. ուժային ազդեցություն է թողնում շարժվող էլ. լիցքերի, էլ. հոսան-քակիր հաղորդիչների, հաստատուն մագ-նիսների և մագնիս. մոմենտով օժտված այլ ֆիզ. օբյեկտների վրա: Ժամանակի ընթացքում փոփոխվող Մ. դ. ստեղծում է էլ. դաշտ: Էլ. և մագնիս. դաշտերը, դրանց փոխազդեցությունը նկարագրվում են *Մաքսվելի հավասարումներով*:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԼԱՐՎԱԾՈՒԹ-ՅՈՒՆ, մագնիս. դաշտի ուժային բնութա-գիր, կախված չէ միջավայրի հատկութ-յուններից: Վակուումում $\vec{H}$ համընկնում է (ՍԳՎ միավորներով) $\vec{B}$ մագնիս. ինդուկ-ցիայի հետ: Միջավայրում $\vec{H}$ բնութագրում է մագնիս. ինդուկցիայի այն մասը, որը պայմանավորված է դաշտի արտաքին աղբյուրների ազդեցությամբ: ՄՄՀ-ում չափվում է *Ա/մ*-ով:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ, մագնիս. շղթայի բնութագիր, շղթայի ***մագնիսաշարժ ուժի*** և շղթայում ստեղ-ծված մագնիս. հոսքի հարաբերությունը:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՆԱԿՈՒԹ-ՅՈՒՆ նյութի կամ **միջավայրի** (սո-վորաբար նշանակում են χ), նյութի $\vec{M}$ մագնիսացվածություն և այդ նյութում ***մագնիսական դաշտի*** $\vec{H}$ լարվածության կապը բնութագրող ֆիզ. չափազուրկ մեծություն: Ստատիկ. մագնիս. դաշտում $\chi = M/H$: Հաճախ օգտագործվում է (ֆեռո-մագնիսների համար) նաև դիֆերենցիալ Մ. ը.՝ $\chi_n = dM/dH$:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԹԱԿԱՐԴՆԵՐ, փոխ-դասավորված մագնիս. դաշտեր, որոնք պլազմայի լիցքավորված մասնիկները տևականորեն պահում են տարածության որոշակի ծավալում: Մ. թ. ստեղծվում են լաբորատորիաներում՝ ***ջերմամիջուկային կառավարվող սինթեզի*** իրականացման նպատակով: Բնական Մ. թ. է Երկրի մագ-նիս. դաշտը:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԹԱՓԱՆՑԵԼԻՈՒԹ-ՅՈՒՆ նյութերի կամ **միջավայրի** (նշա-նակվում է μ), $\vec{B}$ մագնիս. ինդուկցիայի և նյութի մեջ (միջավայրում) $\vec{H}$ մագնիս. դաշտի լարվածության միջև եղած կապը բնութագրող մեծություն, $\mu = \vec{B}/\vec{H}$

(ՍԳՎ միավորներով) կամ $\mu = \vec{B}/(\mu_0\vec{H})$ (ՄՄՀ միավորներով), որտեղ μ_0 ***մագնի-սական հաստատունն*** է: Մ. թ. կապված է χ մագնիս. ունակության հետ՝ $\mu = 1 + 4\pi\chi$ (ՍԳՎ միավորներով) կամ $\mu = 1 + \chi$ (ՄՄՀ միավորներով):

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԺԱՊԱՎԵՆ, մագնիս. նյութի բարակ շերտով պատած պոլիմեր. ճկուն ժապավենի տեսքով տեղեկույթի կրիչ: Մ. ժ-ի վրա տեղեկույթն արձանագ-րվում է մագնիս. գրանցման եղանակով:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԻՆԴՈՒԿՑԻԱ, $\vec{B}$ վեկ-տոր. մեծություն, որը ***մագնիսական դաշտի*** ուժային բնութագիրն է: Մագնիս. դաշտի $\vec{H}$ լարվածության և նյութի $\vec{M}$ մագնիսացվածության հետ կապված է

$$\vec{B} = \vec{H} + 4\pi\vec{M}$$

(ՍԳՎ միավորներով) և $\vec{B} = \mu_0(\vec{H} + \vec{M})$ (ՄՄՀ միավորներով) արտահայտութ-յամբ, որտեղ μ_0-ն ***մագնիսական հաստա-տունն*** է: Մ. ի-ի չափման միավորը ՄՄՀ-ում ***տեսլան*** է. 1 $Տլ = 1Վբ/մ^2 = 1$ Հ / (*Ա/մ*):

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԿՇԵՌ, նյութերի մագ-նիսընկալունակության և մագնիս. անհա-մասեռության հաստատունների չափման հատուկ կշեռք (լծակավոր, պտտման ևն)՝ ըստ մեխ. ուժի, որն ազդում է անհամա-սեռ մագնիս. դաշտում տեղադրված հե-տազոտվող նմուշի վրա:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՀԱԿՈՒՄ, **մագնիսա-կան սլաքի հակում**, Երկրի մակերևույթի տվյալ կետում մագնիս. և աշխարհագր. միջօրեականների միջև եղած անկյունը: Մ. հ. համարվում է դրական, եթե մագնիս. սլաքի հս. ծայրն աշխարհագր. միջօրեա-կանից շեղվում է դեպի արլ., և բացաս.՝ դեպի արմ.:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԱԿԱԾ, Երկրի մակերևույթի վրա կետերի երկրչփ. տեղ, որտեղ ***մագնիսական հակումը*** հավա-սար է 0-ի:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՆ (ֆիզ.), գոր-ծակից՝ $\mu_0 = 4\pi\times10^{-7}$ *Հ/մ* = 1,256637 × 10^{-6} *Հ/մ*, որը մտնում է մագնիսականության և էլեկտրամագնիսականության որոշ հա-վասարումների մեջ, երբ դրանք գրվում են ռացիոնալացված տեսքով (ՄՄՀ-ում):

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐ, տարբեր ֆեռո- կամ ֆեռիմագնիս. միադոմեն մասնիկների կոլոիդ. լուծույթները սովոր. հեղուկներում: Օժտված են հատկություն-ների բացառիկ համակցությամբ՝ բարձր հոսունությամբ, մինչև հագեցում մագնի-սանալու ունակությամբ, մագնիս. դաշտի հետ ակտիվ փոխազդեցությամբ:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՀԻԴՐՈԴԻՆԱՄԻԿԱ, ուսումնասիրում է էլեկտրահաղոր-դիչ միջավայրերի (հեղուկ մետաղներ, էլեկտրոլիտներ, պլազմա) շարժումը մագնիս. դաշտում և այդ մագնիս. դաշ-տի դինամիկան: Մ. հ-ի տես. հիմքը ***հիդրոդինամիկայի*** հավասարումներն են և ***Մաքսվելի հավասարումները***: Մեծ հաղորդականությամբ (տաք պլազմա) և մեծ չափերով (աստղաֆիզ. օբյեկտներ) միջավայրերում սովոր. գազադինամիկ. ճնշմանն ավելանում են մագնիս. ճնշումն ու մագնիս. ձգողականությունը, որոնք բերում են ***Ալվենի ալիքների*** առաջացմա-նը: Մ. հ. բացատրում է տիեզ. ֆիզիկայի բազմաթիվ երևույթներ՝ Երկրի և Արե-գակի մագնիսականությունը, Գալակտի-կայում մագնիս. դաշտերի առաջացումը, Արեգակի վրա գունոլորտ. բռնկումները, մագնիս. փոթորիկները ևն: Մ. հ-ի հիման վրա կառուցում են գեներատորներ, պոմ-պեր, հնարավոր է իրականացնել նաև կառավարվող ջերմամիջուկ. սինթեզ:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՀՈՍՔ, $\vec{B}$ մագնիս. ին-դուկցիայի վեկտորի հոսքը որևէ մակե-րևույթով: Մ. հ. փոքր dS մակերևույթով, որի սահմաններում $\vec{B}$ վեկտորն անփո-փոխ է, հավասար է՝ $d\Phi = B_n dS$, որտեղ B_n-ն $\vec{B}$ վեկտորի պրոյեկցիան է dS մա-կերևույթի ուղղահայացի վրա: Ամբողջ մակերևույթով Φ Մ. հ. հավասար է $d\Phi$-ի ինտեգրալին այդ մակերևույթով: Փակ մակերևույթի Մ. հ. հավասար է 0-ի, ին-չը ցույց է տալիս բնության մեջ մագնիս. լիցքերի՝ մագնիս. դաշտի աղբյուրի բա-ցակայությունը:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՄԱԾՈՒՑԻԿՈՒԹՅՈՒՆ, 1. **մագնիսական հետազդեցություն**, մագնիսանյութի բնութագրերի (մագնիսա-ցածություն, թափանցելիություն) փոփո-խության (ըստ ժամանակի) հապաղումն արտաքին մագնիս. դաշտի լարվածության փոփոխության նկատմամբ: 2. **Մագնի-սական հիդրոդինամիկայում**, մագնիս. դաշտում շարժվող էլեկտրահաղորդիչ հե-ղուկների և գազերի կինետիկ. ու դինամիկ. հատկությունները բնութագրող մեծություն:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՄԻԱԲԵՎԵՌ, վարկա-ծային մասնիկ, որն էլ. լիցքի նմանութ-յամբ ունի 1 մագնիս. բևեռ: Առաջինը դիտարկել է Պ. *Դիրակը*: Փորձարար. եղանակով չի հայտնաբերվել: Մ. մ-ի գոյությունը կրացատրեր բնության մեջ դիտվող էլ. լիցքի «քվանտացումը»՝ տարր. էլ. լիցքին նրա բազմապատիկ լինելը: Դաշտի ժամանակակից տե-սություններում (գերհամաչափության, գերլարերի) Մ. մ-ի գոյությունը ոչ միայն

հնարավոր է, այլև պարտադիր: Օր.՝ գերլարերի տեսության Մ. մ-ի զանգվածը գնահատվում է որպես 10^{19} Գէվ:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՄԻՋՕԲԵԱԿԱՆ, Երկրի մագնիս. դաշտի ուժագծերի պրոյեկցիան Երկրի մակերևույթի վրա: Մ. մ-ները բարդ կորեր են, որոնք զուգամիտվում են Երկրի հս. և հվ. մագնիս. բևեռներում:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՄՈՄԵՆՏ, վեկտոր. մեծություն, որը նյութը բնութագրում է որպես մագնիս. դաշտի աղբյուր: Մակրոսկոպիկ Մ. մ. ստեղծում են էլ. փակ հոսանքները և ատոմ. մասնիկների կարգավորված կողմնորոշում ունեցող Մ. մ-ները: Միկրոսկոպիկ մասնիկները (օր.՝ էլեկտրոնները ու ատոմները) ունեն ուղեծրային Մ. մ. և մասնիկի սպինով պայմանավորված սպինային Մ. մ.:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ, մագնիսանյութեր, նյութեր, որոնք իրենց ֆեռո- և ֆեռիմագնիս. հատկությունների շնորհիվ օգտագործվում են տեխնիկայում: Ըստ մագնիսացման և վերամագնիսացման դյուրության՝ Մ. ն. լինում են մագնիսափափուկ և մագնիսակարծր: Ըստ բյուրեղ. կառուցվածքի՝ Մ. ն. կարող են լինել բազմա- և միաբյուրեղ., ամորֆ: Առանձնացնում են նաև մագնիսաթաղանթներ և հեղուկներ:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՈՍՊՆԱՑԱԿՆԵՐ, որոշակի համաչափության մագնիս. դաշտ ստեղծելու համար նախատեսված սարքավորումներ: Կիզակետում են լիցքավորված մասնիկների հոսքերը, կիրառվում էլեկտրոն. և իոն. մանրադիտակներում, լիցքավորված մասնիկների արագացուցիչներում և այլուր:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՄԱՌԵՑՈՒՄ, աղիաբատ ապամագնիսացում, ուժեղ մագնիս. դաշտում պարամագնիսների ջերմաստիճանի անկում՝ այդ դաշտի արագ անջատման դեպքում (տես *Մագնիսակալորիական էֆեկտ*): Կատարվում է պարամագնիսի ներքին էներգիայի՝ նրա միկրոմասնիկների պարամագնիս. մոմենտների ապամագնիսացման վրա ծախսման պատճառով: Պարամագնիս. աղերում Մ. ս. հնարավորություն է տալիս ստանալու ~10^{-3} K ջերմաստիճան, իսկ միջուկ. մագնիս. մոմենտների համակարգերում՝ 10^{-5}–10^{-6} K ջերմաստիճան:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՍԿԱՎԱՌԱԿ, պնակիտ, 1,5–2 *մմ* հաստ-յան այլումինե (երբեմն՝ խեցե կամ հատուկ ապակե) կամ պլաստմասսայե՝ մագնիս. շերտով պատած սկավառակի տեսքով տեղեկույթի կրիչ: Տեղեկույթը դրա վրա արձանագրում են մագնիս. գրանցման միջոցով: Այլումինե կոշտ (**վինչեստրային**) Մ. ս-ները հավաքում են փաթեթի մեջ՝ 2–16-ական: Մեծ սկավառակի տարողությունը 10^2–10^3 *Մբայթ* է:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՍՊԵԿՏՐԱՉԱՓ, լիցքավորված մասնիկների հոսքերի ինտենսիվության և նրանց մոմենտների միջև եղած կախման չափման սարք: Գրանցում է կամ մասնիկի էներգետիկ. սպեկտրը (10^{-3} աստիճան հարաբեր. սխալով), կամ մասնիկների սպեկտրները՝ ըստ զանգվածի (10^{-4} և ավելի հարաբեր. սխալով):

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՎԱՐԻԱՑԻԱՆԵՐ, ժամանակի ընթացքում Երկրի մագնիս. դաշտի անընդհատ փոփոխություններ, որոնք առաջանում են Արեգակի ակտիվության ցիկլ. փոփոխություններով, Երկրի ուղեծր. և պտտ. շարժումներով, նրա ընդերքում տեղի ունեցող շաժընթացներով և այլ պատճառներով:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՈՒԺԵՂԱՐԱՐ, ՅՀ էլ. ազդանշանների հզորության ուժեղարար, որի գործողության հիմքում *մագնիսական ինդուկցիայի* և *մագնիսական դաշտի* լարվածության՝ ֆեռոմագնիս. նյութերին հատուկ ոչ գծային կախումն է: Ուժեղացումը հնարավոր է ֆեռոմագնիս. միջուկով կոճի դիմադրության կառավարումով: Օգտագործում են չափող սարքերում, ավտոմատիկայի սարքավորումներում և այլ սարքերում:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՓՈԹՈՐԻԿՆԵՐ, Երկրի *մագնիսական դաշտի* ուժգին խոտորումներ, որոնք էականորեն խախտում են նրա սահուն օրական ընթացքը: Մ. փ. դիտվում են միաժամանակ ողջ Երկրի վրա և տևում են մի քանի ժամից մինչև մի քանի օր: Առաջանում են Արեգակի ակտիվ տիրույթներից դուրս եկող պլազմայի ուժեղ հոսքերի (*արեգակնային քամի*) և Երկրի *մագնիսոլորտի* փոխազդեցության հետևանքով:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՔԱՐՏ, մի կողմում մագնիս. շերտով ստվարաթղթե կամ պլաստիկե քարտ, որի վրա մագնիս. գրանցման եղանակով արձանագրված է տեղեկույթ: Օգտագործվում է որպես անցաթուղթ՝ ճանաչման փաստաթուղթ, մագնիս. կողով յուրատիպ «բանալի»:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (հուն.՝ magnetis – մագնիս. քար), 1. նյութ. հատուկ փոխազդեցությունների հետ կապված երևույթների համախումբ, որոնք առաջանում են մագնիս. մոմենտներով մասնիկների միջև: 2. Ֆիզիկայի բաժին. ուսումնասիրում է Մ-յան փոխազդեցությունները և մարմինների (մագնիսանյութերի) այն հատկությունները, որոնցում դրանք արտահայտվում են: Մագնիս. փոխազդեցություններում մասնակցում են տարր. մասնիկներ (էլեկտրոններ, պրոտոններ), էլ. հոսանքներ և մագնիսացված մագնիս. մոմենտներով մասնիկները:

ՄԱԳՆԻՍԱԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, կենսաֆիզիկայի բաժին. ուսումնասիրում է կենդանի օրգանիզմների վրա արտաքին մագնիս. դաշտի ազդեցությունը, նաև օրգանիզմում (օր.՝ գլխուղեղում, նյարդում ևն) առաջացող մագնիս. դաշտը:

ՄԱԳՆԻՍԱՀԻԴՐՈԴԻՆԱՄԻԿԱԿԱՆ ԳԵՆԵՐԱՏՈՐ, ՄՀԴ **գեներատոր**, մագնիս. դաշտում շարժվող բանող մարմնի (հեղուկ. կամ գազանման էլեկտրահաղորդիչ միջավայր) էներգիան անմիջականորեն հաստատուն կամ փոփոխ. հոսանքի էլեկտրաէներգիայի փոխակերպող սարք: Մեք. գեներատորի համեմատությամբ Մ. գ-ի հիմն. առավելությունը շարժվող մասերի բացակայությունն է, արագորեն աշխ. ռեժիմի բերվելը, երկար ժամանակ մշտապես աշխ-ի պատրաստ լինելը, որը կարևոր է բարձրակետային և վթար. էլեկտրակայանների համար: Աշխակվել են Մ. գ-ներ, որոնց հաշվարկ. օգգ 58–60 % է: Այրման արգասիքներով աշխատող փորձն. Մ. գ-ների էլ. հզորությունը հասել է 21 *ՄՎտ*-ի, անընդհատ աշխ-ի տևողությունը՝ 1000 *ժ*-ի:

ՄԱԳՆԻՍԱԶԱՅՆԱՅԻՆ ԱԼԻՔՆԵՐ, ՅՀ էլեկտրամագնիս. տատանումներ, որոնք տարածվում են պլազմայում մագնիս. դաշտի լայնքով: Դրանք իրենց մեջ պարունակվող մագնիս. դաշտով պլազմայի կծկումներ-նոսրացումներ են, որոնք տեղափոխվում են տարածման ուղղության երկայնքով (ձայն. ալիքների նման): Մ. ա. առաջինը 1942-ին նկարագրել է Հ. *Ալվենը*: Նա դիտարկել է մագնիսացած հաղորդիչ հեղուկի տատանումները և բացահայտել մագնիսահիդրոդինամիկ. ալիքները, որոնք տարածվում են մագնիս. դաշտի երկայնքով (ալվենյան ալիքներ) ու լայնքով (Մ. ա.):

ՄԱԳՆԻՍԱՇԱՐԺ ՈՒԺ, մագնիսացնող ուժ, մագնիս. դաշտի աղբյուրների (հոսանքների) մագնիս. հոսքեր ստեղծելու ունակության բնութագիրը: Ներմուծվում է մագնիս. շղթաների հաշվարկման ժամանակ՝ էլ. շղթաների էլշուի նմանությամբ:

ՄԱԳՆԻՍԱՉԱՓ, մագնիս. դաշտի բնութագրերի և նյութի մագնիս. հատկությունների չափման սարք: Լինում են մագնիսաստատիկ., մագնիսադինամիկ., էլեկտրամագնիս., ինդուկցային, քվանտ. (այդ թվում՝ գերհաղորդիչ Մ-ներ): Ըստ նշանակման՝ տարբերում են էրստեդաչափներ, ինկլինատորներ և դեկլինատորներ, գրադիենտաչափներ ևն:

ՄԱԳՆԻՍԱՊԼԱՍՏՆԵՐ, բաղադրյալ նյութեր, որոնք պատրաստվում են մագնիսաամուր նյութի փոշու և կապակցող պոլիմեր. բաղադրիչի հիմքի վրա: Դրանք պոլիմեր. հաստատուն մագնիսներ են: Ըստ կապակցող պոլիմերի հատկությունների՝ լինում են կոշտ, ջերմապլաստ. և էլաստիկ (մագնիսաէլաստիկ) Մ.: Կարող են լինել մագնիսահզոտրոպ և մագնիսաանիզոտրոպ (մագնիս. կազմվածք ունեցող): Իզոտրոպ Մ. հնարավորություն են տալիս ստեղծելու բազմաբնույթ բարդ փոխդասավորության դաշտեր:

ՄԱԳՆԻՍԱՋԵՐՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ, բացարձակ 0-ի մոտ ջերմաստիճանների որոշում՝ պարամագնիսանյութի (սովորաբար՝ պարամագնիս. աղի) մագնիս. ընկալունակության չափման միջոցով: Հիմնված է ջերմաստիճանից մագնիս. ընկալունակության միարժեք կախման վրա:

ՄԱԳՆԻՍԱՌԵԶՈՆԱՆՍԱՅԻՆ ՇԵՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ, *միջուկային մագնիսական ռեզոնանսի* երևույթի վրա հիմնված ախտորոշման մեթոդ. հնարավորություն է տալիս ստանալու ներքին օրգանների (այդ թվում՝ գլխուղեղի և ողնուղեղի) մանրամասն պատկերներ: Կիրառում են կաթվածների, գլխուղեղի ուռուցքների, ցրված կարծրախտի և այլ հիվանդությունների բացահայտման համար:

ՄԱԳՆԻՍԱՍՏԱՏԻԿԱԿԱՆ ԴԱՇՏ, մագնիս. դաշտ, որի լարվածությունը (ըստ մեծության և ուղղության) ժամանակի ընթացքում չի փոխվում. ստեղծվում է հաստատուն մագնիսներով և հաստատուն էլ. հոսանքներով:

ՄԱԳՆԻՍԱՍՏԱՏԻԿԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱ, մագնիսանյութի էներգիայի մաս, որը պայմանավորված է տարբեր ատոմ. մագնիս. մոմենտների (դիպոլների) դիպոլ–դիպոլ փոխազդեցությամբ:

ՄԱԳՆԻՍԱՍՏՐԻԿՑԻԱ (< *մագնիս* և լատ.՝ strictio – սեղմում, կծկում), **մագնիսակծկում**, բյուրեղ. մարմնի ձևի և չափերի փոփոխությունները մագնիս. վիճակի փոփոխության դեպքում: Առաջանում են մագնիս. դաշտում բյուրեղ. ցանցի էներգ. վիճակի և, որպես հետևանք, ցանցի հանգույցների հեռ-յունների փոփոխությունների հետևանքով: Մ. առավել մեծ արժեքների հասնում է ֆեռո- և ֆեռիմագնիսանյութերում, որոնցում մագնիս.

մասնիկների փոխազդեցությունները հատկապես մեծ են: Մ–ի հակադարձ երևույթը *Վիլարիի էֆեկտն* է:

ՄԱԳՆԻՍԱՅԱԾՈՒԹՅՈՒՆ, մակրոսկոպիկ մարմնի մագնիս. վիճակի բնութագիր: Մարմնի մագնիս. մոմենտի հարաբերությունն է նրա ծավալին, այսինքն՝ միավոր ծավալի ***մագնիսական մոմենտը***:

ՄԱԳՆԻՍԱՅՄԱՆ ԿՈՐԵՐ, արտաքին մագնիս. դաշտի H լարվածության և մագնիս. նյութի M մագնիսացման կախման գրաֆիկ. պատկերումը: Տարբերում են **առաջնային, ցիկլային** (հիսթերիզիսի ստատիկ օղակներ) և **հիմնական** կամ **տեղափոխական** (գերմագնիսացման դեպքում) Մ. կ.: Ըստ դրանց՝ որոշում են նյութերի մագնիս. հատկությունները (մագնիս. ունակություն, մնացորդ. մագնիսացածություն ևն):


ՄԱԳՆԻՍԱՑՈՒՄ, մագնիսանյութի $\vec{M}$ ***մագնիսացածության*** աճը՝ արտաքին մագնիս. դաշտի $\vec{H}$ լարվածության մեծացման դեպքում: Ֆեռոմագնիսանյութերում Մ. սկզբում կատարվում է այն դոմենների ծավալի մեծացման հաշվին, որոնց ինքնաբերական $\vec{M}_s$ մագնիսացածության կողմնորոշումն ավելի մոտ է $\vec{H}$–ի ուղղությանը (շարժընթացը կատարվում է անհավասարաչափ՝ ցատկերով, որի հետևանքով մագնիսացման կորն աստիճանաձև է՝ **Բարկհաուզենի էֆեկտ**), այնուհետև $\vec{M}_s$ վեկտորների՝ դեպի դաշտի ուղղության կողմը շրջվելու հաշվին, շարժընթացն ավարտվում է բնական Մ–ով (պարաշարժընթաց): Ֆեռիմագնիսանյութերի Մ. ստեղծվում է մագնիս. ենթացանցերի մագնիսացածության վեկտորների տարբերության կողմնորոշմամբ՝ սկզբում՝ դաշտի, այնուհետև՝ նրա լայնակի (ենթացանցերի շրջում) ուղղություններով և, վերջապես, բոլոր ատոմ. մագնիս. մոմենտների վերակողմնորոշմամբ՝ դաշտի երկայնքով:

ՄԱԳՆԻՍԱՓԱՓՈՒԿ ՆՅՈՒԹԵՐ, մագնիս. նյութեր, որոնք մինչև հագեցումը մագնիսանում և ապամագնիսանում են համեմատաբար թույլ՝ 8–800 *Ա/մ* լարվածություններով մագնիս. դաշտերում: Բնութագրվում են մագնիս. բարձր թափանցելիությամբ, ցածր կոէրցիտիվ ուժով, փոքր կորուստներով հիսթերիզիսում և *մրրկային հոսանքներում*: Դասակարգում են թույլ հոսանքների նյութերի (օր.՝ պերմալոյ, պերմենդյուր, թույլ ֆեռիտներ, ֆեռոնռնաքարեր) և էլեկտրատեխ. պողպատների: Հատուկ նշանակման Մ. ն–ից են ջերմամագնիս. համաձուլվածքները և մագնիսաստրիկցիային նյութերը:

ՄԱԳՆԻՍԱՕՊՏԻԿԱ (ֆիզ.), օպտիկայի բաժին. ուսումնասիրում է մագնիս. դաշտում տեղադրված մարմիններում լույսի արձակման, տարածման և կլանման հետ կապված երևույթները (օր.՝ Զեեմանի էֆեկտ, Կեռի մագնիսաօպտիկ. էֆեկտ, Կոտոն–Մուտոնի էֆեկտ, Ֆարադեյի էֆեկտ):

ՄԱԳՆԻՍԻ ԲԵՎԵՌ, մագնիսացած մարմնի մակերևույթի մաս, որի վրա առկա է ***մագնիսացածության*** վեկտորի նորմալ բաղադրիչ (մակերևույթի այդ հատվածը հատում են մագնիս. դաշտի ուժագծերը): Մ. բ. կոչվում է **հյուսիսային** (N, դրական), եթե մագնիս. ուժագծերը նրանից դուրս են գալիս, **հարավային** (S, բացասական)՝ եթե մտնում են:

ՄԱԳՆԻՍՈԼՈՐՏ Երկրի և այլ մոլորակների, մերձմոլորակ. տարածության



Երկրի մագնիսականության տարրեր. T – մագնիսական դաշտի լարվածության վեկտորը, H – դաշտի հորիզոնական բաղադրիչը, D – մագնիսական հակումը

տիրույթ, որի ֆիզ. հատկությունները պայմանավորված են մոլորակի մագնիս. դաշտով և տիեզ. ծագման լիցքավորված մասնիկների հոսքի (***արեգակնային քամի***) հետ նրա փոխազդեցությամբ: Լուսավոր կողմից Երկրի Մ. տարածվում է մինչև 8–10 $R_\oplus$ ($R_\oplus$ Երկրի շառավիղն է), մութ կողմից այն ձգված է և առաջացնում է Երկրի Մ–ի, այսպես կոչված, պոչը՝ մի քանի հարյուր $R_\oplus$ երկ–յամբ: Մ–ում են ***ճառագայթային գոտիները***: Ձգված Մ–ներ ունեն Յուպիտերն ու Սատուռնը: Մերկուրիի, Վեներայի և Մարսի Մ–ներն արտահայտված չեն:

ՄԱԳՆԻՏԱՖՈՆ, մագնիս. ժապավենի վրա ձայնի մագնիս. գրանցման և վերարտադրման սարք: Տարբերում են մասնագիտ. (ստուդիական, ռեպորտաժ. ևն) և կենցաղ., մոնո– և ստերեոֆոն., ժապավենակոճ. և կասետ. Մ–ներ:

ՄԱԳՆԻՑԿԻ (ազգանունը տվել է Պետրոս I–ը) Լեոնտի Ֆիլիպովիչ (1669–1739), ռուս մաթեմատիկոս, մանկավարժ, ճարտարագետ: Ռուս. առաջին մաթ. ձեռնարկի («Թվաբանություն...», հ. 1–2, հրտ.՝ 1703) հեղինակը: Ներմուծել է մի շարք մաթ. տերմիններ, նաև թվերի նոր նշանակումներ՝ միլիոն, բիլիոն, տրիլիոն, կվադրիլիոն: Մասնակցել է Ա. Վյակի լոգարիթմ. (1703), աստղագիտ. և նավագնաց. աղյուսակների (1722, թարգմ.՝ հոլ–ից) հրատարակմանը: Մ–ի գծագրերով Վելիկիե Լուկիում կառուցվել է 6–բուրգանի հողե ամրոց (1704–08):

ՄԱԳՆԻՖԻԿԱՏ («Magnificat anima mea Dominum» – «Տե՛ր, փառաբանի՛ր հոգիս», լատ. տեքստի առաջին բաղադրիչը), արևմտաքրիստ. եկեղեցու ժամերգության: Հիմքում՝ Ավետարանի Ավետման քարոզը: XVIII–XXI դդ–ում Մ. բնույթով մոտ է եղել կանտատին, օրատորիային (Յ. Ս. Բախ, Վ. Ա. Մոցարտ, Ֆ. Մենդելսոն, Ք. Պենդերեցկի և ուր.):


ՄԱԳՆՈԼԻԱ (Magnolia), մագնոլիազգիների ընտանիքի մշտադալար կամ տերևաթափ ծառերի, հազվադեպ՝ թփերի ցեղ: Հայտնի է 80 տեսակ: Մշակության մեջ լայնորեն տարածված է մոտ 15 տեսակ, որպես զեղազարդիչ առավել տարածված է (նաև ՀՀ–ում) խոշորածաղիկ Մ.: Տերևներից պատրաստում են դեղապատրաստուկ:

ՄԱԳՆՈՆ, քվազիմասնիկ, մագնիսակարգավորված միջավայրում ***սպինային ալիքի*** քվանտ. նմանակը: Մ. նշանակալի չափով բնութագրում է ֆեռո– և հակաֆեռոմագնիսանյութերի թերմոդինամիկ., կինեմատիկ., օպտիկ. և այլ հատկություններ:

ՄԱԳՆՈՒՍ (Magnus) Հենրիխ Գուստավ (1802–1870), գերմանացի ֆիզիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1854): Աշխ–ները վերաբերում են մեխանիկային, հիդրոդինամիկային, ջերմությանը ևն: Հայտնաբերել է իր անվամբ կոչված ***Մագնուսի էֆեկտը***: Բեռլինի ֆիզ., Գերմանիայի քիմ. ընկ–ների հիմնադիրներից:

ՄԱԳՆՈՒՍ Ռուդոլֆ (1873–1927), նիդեռլանդացի ֆիզիոլոգ և դեղաբան: Հետազոտել է օրգանիզմում ջրի և քլորիդների փոխանակությունը, կմախք. մկանունքի կարգավորումը: Բացահայտել և ուսումնասիրել է մարմնի կեցվածքը (դիրքը) և հավասարակշռությունը պահպանող շարժող. ռեֆլեքսները:

ՄԱԳՆՈՒՍԻ ԷՖԵԿՏ, հեղուկի կամ գազի հոսքով շրջահոսվող պտտվող մարմնի վրա ազդող $\vec{Y}$ լայնական ուժի առաջացումը: Ուղղված է այն կողմը, որտեղ հոսքի $\vec{v}$ արագության և մարմնի պտույտի ուղղությունները համընկնում են (տես նկ.):



Հայտնաբերել է Հ. ***Մագնուսը*** 1852–ին:

ՄԱԳՈՄԱԵՎ Աբդուլ–Սուլիմ Սուհամմեդի (1885–1937), ադրբեջանցի կոմպոզիտոր, դիրիժոր: Ադրբ. ԽՍՀ արվ. վաստ գործիչ (1935): Մ. Մ. ***Մագոմաևի*** պապը: Ադրբ. երաժշտ. թատրոնի հիմնադիրներից: Կազմել և հրատարակել է ադրբ. ժող. երգերի 1–ին ժող–ը (1927, Ու. ***Հաջիբեկովի*** հետ): Հեղինակ է «Շահ Իսմայիլ» (1919), «Նարգիզ» (1935) օպերաների, սիմֆոնիաների և այլ գործերի: Աշակել է ադրբ. ժող. երգեր:

ՄԱԳՈՄԱԵՎ Սուլիմ Սուհամմեդի (1942–2008), ադրբեջանցի երգիչ (բարիտոն): Ադրբ. ԽՍՀ (1971), ԽՍՀՄ (1973) ժող. արտիստ: Ա–Մ. Մ. ***Մագոմաևի*** թոռը, Տ. Ի. ***Մինյավկայայի*** ամուսինը: 1975–89–ին՝ Ադրբեջանի էստրադ–սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ.: Ճանաչվել է Առնո Բաբաջանյանի երգերի կատարումներով: Հեղինակ է էստրադ–սիմֆ., նվագախմբային երկերի, երգերի, կինոերաժշտության:

ՌԴ Պետրոս Մեծի անվ. (2005), Ազգ. (2008) մրց–ներ:

ՄԱԴԱԳԱՍԿԱՐ (Madagascar), կղզի Հնդ. օվկ–ում՝ Աֆրիկայից մոտ 400 *կմ* արլ.: Տարածքը՝ 590 հզ. *կմ²*, երկ.՝ մոտ 1600 *կմ*, լայն.՝ ավելի քան 600 *կմ*: Համանուն պետության հիմն. մասն է:

ՄԱԴԱԳԱՍԿԱՐ (Madagaskara), պետություն Հնդ. օվկ–ում՝ համանուն և մի շարք փոքր կղզիների վրա: Տարածքը՝ 587,3 հզ. *կմ²*, բն.՝ 21,28 մլն (2010): Մայրաքաղաքը՝ ***Անտանանարիվո***: Պաշտոն. լեզուները՝ մալգաշ., ֆրանս. և անգլ.: Կառավարման ձևը՝ խառը հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը (Ազգ. ասամբլեա և Սենատ): Հավատացյալների մեծ մասը քրիստոնյա է, կան նաև մահմեդականներ և ավանդ. հավատալիքների հետևորդներ: Բաժանված է 22 վարչ. շրջանների: Անդամակցում է ՄՄԿ–ին, Աֆրիկ. միությանը, ԱՀԿ–ին ևն: Աշխարհի ամենաաղքատ, ագրար. տնտ–յամբ երկրներից է: ՀՆԱ–ն 1 շնչին հաշվով 1 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է գյուղմթերք, ծովամթերք, շաքար, հագուստ, քրոմիտներ, նավթամթերք ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, դեղեր, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ արիարի:

Մ. թ. ա. X–VI դդ–ում կղզում հայտնվել են ինդոնեզացիներ, պոլինեզացիներ, մելանեզացիներ, ավելի ուշ՝ բանտու ցեղեր և արաբներ: Մ. թ. XIV դ–ում Մ–ի կենտրոնում կազմավորվել է Իմերինա (Իմերնա) պետությունը: XVI–XVII դդ–ում

ստեղծվել են մի շարք մանր պետություններ, որոնք XIX դ–ում միավորվել են կենտրոնացված պետության՝ Սալագաշ. կամ Մ–ի թագավորության մեջ: XVI դ–ում կղզում հայտնվել են պորտուգալացիներ: 1883–ին Մ. են ներխուժել ֆրանս. զորքերը: 1885–ին Ֆրանսիան Մ–ում հաստատել է իր պրոտեկտորատը, 1897–ին վերացրել միապետությունը: 1958–ին Մ. հռչակվել է ինքնավար Սալագաշ. Հանրապետություն՝ Ֆրանս. համագործակցության կազմում: 1960–ին հռչակվել է անկախ պետություն (նախագահ՝ Ֆ. Ցիրանանա): 1972–ին Ֆ. Ցիրանանան հարկադրված իշխանությունը հանձնել է զինվորականությանը՝ գեն. Դ. Ռամանանցուայի գլխավորությամբ: Նոր կառ–յունը նախ չեղյալ է հայտարարել ՀԱՀ–ի հետ տնտ. համագործակցության պայմանագիրը, ապա՝ 1960–ի ֆրանս–մալագաշ. համաձայնագիրը՝ ստիպելով երկրից դուրս բերել ֆրանս. զորքերը: 2009–ին պետ. հեղաշրջմամբ իշխանությունն անցել է ընդդիմությանը՝ Ա. Ռաձուելինայի գլխավորությամբ:

ՄԱԴԱԹՅԱՆ Աշոտ (1884–1965), դերասան, ռեժ., թարգմանիչ: 1902–ից խաղացել է Մարտիրոս *Մնակյանի* և Ր. Ըլտվանի խմբերում: 1908–ի երիտթուրք. հեղաշրջումից հետո հիմնադրել է «Ազատ թատրոնը» (Ենովք *Շահենի* հետ): 1919–23–ին՝ Կ. Պոլսի հայ դրամատիկ. թատերախմբի կազմակերպիչներից և ռեժ–ներից: Թուրք. է թարգմանել Գ. Սունդուկյանի «Պեպոն» (բեմ.՝ 1934), Լ. Շանթի «Հին աստվածները» ևն:

ՄԱԴԱԹՅԱՆ Եղիշե Միքայելի (1865–1918), գրականագետ, թարգմանիչ: 1890–1892–ին՝ Շուշիի հոգևոր դպրոցի տեսուչ: Հեղինակ է «Փաւստոս Բուզանդ» (1890) աշխ–յան, Հ. Տենին, Գամառ–Քաթիպային, Ս. Շահազիզին վերաբերող գրականագիտ. հոդվածների: Թարգմանել է Զ. Բայրոնի, Պ. Բերանժեի, Մ. Յ. Լերմոնտովի գործերից:

ՄԱԴԱԶՅԱՆ Վասակ Համբարձումի (1845–1914), դրամատուրգ: Հեղինակ է «Փնջիկ» (1871) բանաստեղծությունների ժող–ի, «Կըղոթ–կըղոթ» (1880), «Մադօյի կտակը» (1888) վոդևիլների, «Ժլատութիւնը թշնամի է վաստակում» (1894), «Անեղեւոյթ շալը» (1900) պիեսների:

ՄԱԴԱԶՈՎ Նիկոլայ (Մադաթյանց Նիկոդայոս) Ալեքսանդրի (1878–1943), ճարտ.: Մ–ի նախագծերով Թիֆլիսում կառուցվել են Նավթլուղի երկթղ. կայարանը, Անդրկովկաս. երկաթգծի վարչության շենքը, երկաթգծի հիվանդանոցի մասնաշենքը, պետբանկը, Գագրայում՝ սպիտակ սյունաշարը:

ՄԱԴԱԹՈՎ (Մադաթյան) Վալերիան (Ռոստոմ) Գրիգորի (1782–1829), ռուս. բանակի հայազգի զորավար, գեն–լեյտ. (1826): Մասնակցել է 1806–12–ի ռուս–թուրք., 1812–ի ֆրանս–ռուս. պատերազմներին, աչքի է ընկել Լայպցիգի («Ժողովուրդների») ճակատամարտում (1813): Նշանակվել է Արցախում տեղակայված ռուս. զորքերի հրամ. (1816), Ղարաբաղի, Շիրվանի և Շաքիի խանությունների օկրուգի պետ (1817–ից): 1826–28–ի ռուս–պարսկ. պատերազմում Շամքորի մոտ 2 հզ. զինվորով հաղթել է (1826–ի սեպտ. 3) պարսկ. 10–հզ–անոց բանակին: 1828–29–ի ռուս–թուրք. պատերազմի Դանուբյան ճակատում՝ հեծյալ դիվիզիայի հրամ.:

ՄԱԴԱԿՅԱՆ Վալերի Նիկոլայի (1946–2002), քիմիկոս–օրգանիկ: Քիմ. գիտ. դ–ր (2000), պրոֆ. (2002): Աշխ–ները վերաբերում են պորֆիրինների և մետադապորֆիրինների սինթեզին և քիմ. փոխարկումներին: Առաջարկել է վարունգի արմատ. և մերձարմատ. փտախտի կանխարգելման պատրաստուկ: ՌԲՍԳԱ անդամ (2001):

ՄԱԴԵՅԱՆ (Մատեյան) Հարություն Մարտիրոսի (1904–1990), կուս. գործիչ, խմբ.: Եղել է Բեյրութի «Նոր փարոս» (1925), «Կարմիր արշալոյս» (1931–32), «Մարտակոչ» (1934), «Ժողովուրդի ձայն», «Յառաջ» թերթերի, Լիբանանի կոմկուսի ԿԿ–ի «Ալ–Նիդա» պաշտոնաթերթի «Կանչ» հավելվածի պատ. խմբ.: ԽՍՀՄ Ժողդ–ների բարեկամության շքանշան (1974):

ՄԱԴԵՅՐԱ (Madeira), 1. գետ Բոլիվիայում և Բրազիլիայում, Ամազոնի աջ, ամենախոշոր վտակը: Կազմավորվում է Անդերից սկիզբ առնող Մամորե և Բենի գետերի միախառնումից: Երկ.՝ 3352 *կմ*, ավազանը՝ 1391 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ ավելի քան 30,5 հզ. *մ³/վ*: Շրջանցում է Բրազիլ. բարձրավանդակը, հոսում Ամազոնի դաշտավայրով: Նավարկելի է մինչև Պորտու Վելյու ք–ը:

2. Կղզեխումբ Ատլանտ. օվկ–ում՝ Աֆրիկայի հս–արմ. ափերի մոտ: Ամենախոշոր կղզին՝ Մադեյրա: Մ. Պորտուգալիայի ֆունշալ օկրուգն է: Տարածքը՝ 797 *կմ²*, բն.՝ մոտ 268 հզ. (2011): Բարձր.՝ մինչև 1862 *մ*: Բնակիչներն զբաղվում են արևադարձ. երկրագործությամբ, գինեգործությամբ: Գլխ. ք–նվինգստ–ը՝ ֆունշալ:

ՄԱԴԵՌՆԱ (Maderna) Բրունո (1920–1973), իտալացի կոմպոզիտոր, դիրիժոր: Ղեկավարել է աշխարհի լավագույն օպեր., 1971–ից՝ Միլանի ռադիոյի սիմֆ. նվագախմբերը: 1954–ին Միլանում հիմնադրել է (Լ. *Բերիոյի* հետ) երաժշտ. ձայնագիտ–յան ստուդիա: Հեղինակ է «Դոն Պեռլիմպլին» ռադիոօպերայի (1962, ըստ Ֆ. Գարսիա Լորկայի), էլեկտրոն. կոմպոզիցիաների («Էդիպ արքա», բալետ, 1970, ևն), կվարտետների և այլ գործերի:

ՄԱԴԵՌՆԱ Կառլո (1555/56–1629), իտալացի ճարտ.: Կառույցներն աչքի են ընկնում զարգացած տարած. հորինվածքով (Սանտա Սուսաննա եկեղեցին, 1597–1603, Սբ Պետրոսի տաճարի կենտր. նավը և ճակատը, 1607–25, երկուսն էլ՝ Հռոմ):

ՄԱԴԵՏՈՅԱ (Madetoja) Լևի (1887–1947), ֆինն կոմպոզիտոր, դիրիժոր: Զարգացրել է Յ. *Սիբելիուսի* ավանդույթները: 1912–16–ին՝ Հելսինկիի, միաժամանակ՝ Վիբորգի ֆիլհարմոնիկ նվագախմբերի դիրիժոր: Հեղինակ է «Պոհյալայսիա» («Հյուսիսաբնակները», 1924), «Յուհա» (1935) օպերաների, 10 կանտատի, 3 սիմֆոնիայի (1915–26) և այլ գործերի:

ՄԱԴԵՐԱ (Մադեյրա կղզու անվանումից), խաղողի գինի (սպիրտ՝ 17–21 %, շաքար՝ 13–240 *գ/դմ³*): Ունի բնորոշ համ և հոտ, որ ստանում են թթվեցմամբ՝ օդի առկայությամբ գինու ջերմ. մշակման (մադերացման) միջոցով:

ՄԱԴՈՅԱՆ Աշոտ Արմենի (1932–2010), ջերմաէներգետիկ: Տեխ. գիտ. դ–ր (1983), պրոֆ. (1985): ՀՃԱ ակադ. (1993): ՌԴ վաստ. գյուտարար (2002): Աշխ–ները վերաբերում են ջէկերի շահագործման փոփոխ. ռեժիմների լավարկման, էներգասարքավորումների շահավետության ու հուսալիության բարձրացման, էլեկտրակայանների հուսալիության և խնայողականության բարձրացման հարցերին: ՄՃԱ (1990) և ՌՃԱ (1992) ակադ.:

ԽՍՀՄ «Պատվո նշան» և Աշխ. կարմիր դրոշի շքանշաններ:

ՄԱԴՈՅԱՆ Արշակ Գևորգի (ծ. 1938), բանաստեղծ, խմբ.: Բանասիր. գիտ. դ–ր (1985), պրոֆ. (1994): 2009–15–ին՝ «Էջմիածին» ամսագրի խմբ.: Հեղինակ է «Առաքել Սյունեցի. Բանաստեղծը» (1987), «Խորհուրդ մեծ եւ սքանչելի», «Երուսաղէմ, Երուսաղէմ…» (երկուսն էլ՝ 1999), համահեղ.՝ «Լուծմունք «Սահմանաց գրոց»» (2004), «Գէորգ Զ Չորէքչեան» (2011) և այլ աշխ–ների: Աշխարհաբարի է վերածել և ծանոթագրել Ղուկաս Սեբաստացու «Դավիթ Բեկի պատմությունը» (1988), «ԺԵ–ԺԶ դարերի ուղեգրություններ» (գիրք 1, 2, 1992, 2005), «Հայկական վարքեր և վկայաբանություններ V–XV դդ.» (1998), Թովմա Մեծոփեցու «Պատմագրական երկերը» (2003) աշխ–ները: ՀԱԵ «Սր Սահակ–Սր Մեսրոպ» շքանշան (2008):

ՄԱԴՈՅԱՆ Լևոն Մանուկի (1909–1964), դուդուկահար: ՀԽՍՀ ժող. արտիստ (1961): 1952–ից՝ Հայաստանի հեռուստատեսության և ռադիոյի ժող. գործիքների անսամբլի մենակատար: Երկացանկում՝ հայկ. ժող. և աշուղ. երգեր, պարեղանակներ, մուղամներ, հայ կոմպոզիտորների գործիք. երկեր ևն: Վերականգնել է Շիրակի բազմաթիվ երգեր ու պարեղանակներ:

ՄԱԴՈՅԱՆ Հովհաննես Արշալույսի (1911–1983), անասնաբույծ–ընտրասերումնաբան: Գղտ. գիտ. դ–ր (1973), պրոֆ. (1974): Աշխ–ները վերաբերում են ՀՀ տարբեր գոտիների խոտի քիմ. բաղադրության, մարսելիության, ընդհ. սննդարարության հարցերին: Կովկաս. գոմեշի ցեղի (1970) ստացման հեղինակներից է:

ՄԱԴՈՅԱՆ Հովհաննես Հովսեփի (1920–1996), անասնաբույծ: Գղտ. գիտ. դ–ր և պրոֆ. (1974): Աշխ–ները վերաբերում են գղտ. կենդանիների անպտղության վերացման խնդիրներին: Առաջարկել է սենյակ. ջերմաստիճանում (18–20°C) խոյի սերմի պահպանման եղանակ:

ՄԱԴՈՅԱՆ Ղուկաս Կարապետի (1906–1975), փոխգնդ. (1944): ԽՄ հերոս (1943): Հերոսի կոչման արժանացել է ՀՄՊ–ի ժամանակ՝ 1943–ի փետր–ին Դոնի Ռոստովի ազատագրման ժամանակ իր գումարտակով երկթղ. կայարանն ազատագրելու և այն 6 օր պահելու համար: 1945–ի հոկտ–ից՝ ՀԽՍՀ առևտրի փոխնախարար, 1951–62–ին՝ սոցիալ. ապահովության նախարար:

ՄԱԴՈՅԱՆ (Մադոն) Նիկոլայ Ալեքսանդրի (ծ. 1973), ջութակահար: ՀՀ վաստ. արտիստ (2004): Ա.պրում է Գերմանիայում: ԵՊԿ պրոֆ. (2002): Երկացանկում՝ Լ. վան Բեթհովենի, Յ. Ս. Բախի, Ն. Պագանինիի, Յ. Բրամսի, Ա. Խաչատրյանի և ուր. գործերից:

ՀՀ նախագահի մրց. (2002), Համառուսաստան. 1–ին (1988, Նովոսիբիրսկ, հատուկ մրց.), միջազգ. (Հ. Վենյավսկու անվ.՝ 1988, Գ. Կուլենկամպֆի անվ.՝ 1991, Քյոլն, 1–ին մրց.՝ 1992, Տոկիո) մրցույթների դափնեկիր:

ՄԱԴՈՅԱՆ Սվետլանա Խաչատուրի (1939–2007), սրտաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1998), պրոֆ. (2001): Աշխ–ները վերաբերում են սիրտանոթ. համակարգի ախտաբանության, ժառանգականության, ժամանակակենսբ–յան և ժամանակասրտաբանության հարցերին:

ՄԱԴՈՅԱՆ Վաղարշակ Վարուժանի (ծ. 1954), լեզվաբան։ Բանասիր. գիտ. դ–ր (1990), պրոֆ. (1991)։ Հեղինակ է «Բառագիտության և քերականության հարցեր» (ռուս., 2000) և այլ աշխ–ների, համահեղ.՝ «Ուկրաիներեն–հայերեն բառարան» (2016) և այլ բառարանների։

ՄԱԴՈՆՆԱ (Madonna, Մադոննա Լուիզա Վերոնիկա Չիկկոնե, Ciccone, ծ. 1958), ամերիկացի էստրադ. երգչուհի, կինոդերասանուհի։ 1978–ից Նյու Յորքում հանդես է եկել պարախմբում, խաղացել Բրոդվեյի թատրոններում։ Թողարկել է ալբոմներ («Մադոննա», «Կույսի նման» ևն), նկարահանվել է «Մարմինը որպես հանցանշան», «Էվիտա» (ըստ Է. Լլոյդ Ուեբերի մյուզիքլի) և այլ ֆիլմերում։

ՄԱԴՐԱՆ, ք. Հնդկաստանում, *Չեննայ* ք–ի անվանումը մինչև 1996–ը։

ՄԱԴՐԱՍԻ ԽՄԲԱԿ, հայ գր–քաղ. կազմ–յուն Հնդկաստանի *Մադրաս* ք–ում։ Ստեղծվել է 1770–ական թթ–ին։ Հայտնի դեմքերից էին Շահամիր *Շահամիրյանը*, Մովսես *Բաղրամյանը* և ուր.։ Խմբակի հետ կապեր է ունեցել *Հովսեփ Էմինը*։ Ծրագրել է ազատագրված Հայաստանում հաստատել հանրապետ. կարգեր, ուրվագծել Ռուսաստանի հետ ազատագրված Հայաստանի ապագա փոխհարաբերությունների բնույթը, առաջադրել է լուսավորության տարածման և ազգ. ինքնագիտակցության արթնացման հարցեր։ Հրատարակել է «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» (1772), «Որոգայթ փառաց» (1773), «Տետրակ, որ կոչի նշաւակ» (1773) երկերը։

ՄԱԴՐԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Մադրասում հայկ. 1–ին տպարանը հիմնադրել է Շահամիր *Շահամիրյանը* 1771–ին, կոչել է իր վաղամեռիկ որդու՝ Հակոբի անունով, տպագրել է 7 անուն գիրք, այդ թվում՝ Մ. Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»–ը (1772), իր մշակած «Որոգայթ փառաց»–ը (1773). գործել է մինչև 1784–ը։ 2–րդ տպարանը հիմնադրել է Հարություն *Շմավոնյանը* 1789–ին, լույս է ընծայել 22 անուն գիրք, նաև հայ. 1–ին պարբ–ը՝ *«Ազդարար»*–ը. գործել է մինչև 1797–ը։ XIX դ–ի սկզբին Մադրասում գործել են ևս 2՝ Սարգիս Ծատուր Աղավալյանի և Հակոբ ու Հովսեփ Նազար–Շամրյան եղբայրների հայկ. տպարանները։

ՄԱԴՐԻԳԱԼ (ֆրանս.՝ madrigal, իտալ.՝ madrigale), 1. աշխարհիկ երաժշտաբանաստեղծ. սիրային–քնար. բովանդակության ոչ մեծ երկ (XIVդ.–XVII դ–ի սկիզբ)։ Զևավորվել է Իտալիայում։ 2. XVII–XVIII դդ–ում՝ սիրային–հաճոյախոս. ոչ մեծ բանաստեղծություն։

ՄԱԴՐԻԴ (Madrid), Իսպանիայի մայրաքաղաքը Մանսանարես գետի ափին, համանուն ԻՄ–ի և պրովինցիայի վարչ. կենտրոնը։ Բն.՝ 3,14 մլն (արվարձաններով՝ 6,3 մլն, 2010)։ Խոշոր տրանսպորտ. հանգույց է. ունի միջազգ. օդանավակայան, մետրոպոլիտեն։ Կան տրանսպորտ., էլեկտրատեխ., քիմիահեղուկործ., թեթև, սննդի, ցեմենտի արդ–յան և այլ ձեռնարկներ։ Միջազգ. գրքոսաշրջության խոշոր կենտրոն է։ Գործում են համալսարաններ, Ազգ. և Համալսարան. գրադարանները, Իսպանիայի թագավոր. ակադ–ը, Պրադո, Ազգ. հնագիտ. թանգարանները ևն։ Կազմավորվել է մավրիտան. Մաջիրիտ ամրոցի (1–ին անգամ հիշատակվում է 932–ին) շուրջը։ 1083–ին քաղաքն արաբներից հետ է նվաճվել։ XIV–XV դդ–ում եղել է Կաստիլյան թագավորների նստավայրը։ 1571–ից Իսպանիայի մայրաքաղաքն է։

Ճարտ. հուշարձաններից են Թագավոր. պալատը (1738–64, այժմ՝ Ազգ. պալատ), ռատուշան (XVII–XVIII դդ.), Սան Խինես (բարոկկո, XVII դ., Էլ Գրեկոյի, Ա. Կանոյի պատկերազարդմամբ), Սան Իսիդրո Էլ Ռեալ (բարոկկո, XVII դ.), Սան Ֆրանսիսկո Էլ Գրանդե (1776–85), Սան Անտոնիո դե լա Ֆլորիդա (1792–98) եկեղեցիները, Տոլեդոյի կամուրջը, Պրադո թանգարանը (1785–1830) ևն։ 1894–ից Մ–ին կից կառուցվել է Եվրոպայում 1–ին ժապավենա. քաղաքը (40 *կմ* երկ–յամբ, այժմ՝ Մ–ի տարածքում)։

ՄԱԴՐԻԴԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԿՈՄՊԼՈՒՏԵՆՍԵ, Իսպանիայի խոշորագույն պետ. բուհը։ Ստեղծվել է 1499–ին՝ Գլխ. դպրոցի (հիմնադրվել է 1293–ին Ալկալա դե Էնարեսում) հիմքի վրա։ 1836–ից՝ Մադրիդում՝ «Կենտրոնական համալսարան» անվանումով։ 2016–ին ուներ շուրջ 80 հզ. ուսանող։

ՄԱԵՎՍԿԻ Վլադիմիր Թեոֆիլովիչ (1857–1917–ից հետո), ռուս գեն–մայոր (1916)։ 1893–ից ծառայել է Կովկասյան ԶՕ–ի գլխ. շտաբում, 1895–ից՝ Վանի փոխհյուպատոս։ 1900, 1903, 1911 և 1913–ին՝ նույն պաշտոնով՝ Ռիզեում։ Հեղինակ է «Հայթաթարական բախումները Կովկասում՝ որպես հայկական հարցի ֆազերից մեկը» (1906) աշխ–յան։

ՄԱԵՎՏԻԿԱ (հուն.՝ maieutike – տատմեր. արվ.), *Սոկրատեսի* մեթոդը, որով հուշող հարցերի միջոցով հմտորեն բացահայտվում էր մարդու թաքնված գիտելիքը։

ՄԱԶԱԳԼՈՒԽ մարդու (Trichocephalus trichiurus), նեմատոդների դասի մակաբույծ, որը մակաբուծվում է հիմնականում մարդու կույր աղիում։ Առաջացնում է տրիխոցեֆալոզ հիվանդությունը։ Արուի երկ.՝ 30–40 *մմ* է, էգերինը՝ 35–50 *մմ*։ Գլխային (առջևի) մասը խիստ բարակ է, մազանման (այստեղից՝ Մ. անվանումը)։

ՄԱԶԱԶ, **Գառնո գավառ**, Այրարատ նահագ–ում՝ Երասխի Ազատ (Գառնի) վտակի վերին ավազանում։ Ենթադրվում է, որ անվանումն առաջացել է գվո–ում իշխող Մազազնունիք տոհմանունից։ Ջորանամակում տեղի իշխանի զորաբաժինը 500 հեծյալ է։ Տարածքը համապատասխանում է ՀՀ Կոտայքի մարզի հվ–արլ. մասին։

ՄԱԶԱԹԵՎԱՎՈՐՆԵՐ, միջատների կարգ։ Երկ.՝ 0,5–30, թևերի բացվածքը՝ մինչև 70 *մմ*, ծածկված են մազերով։ Հայտնի է ավելի քան 3 հզ. տեսակ։ Թրթուրները (պատյաններում) և հարսնյակները սովորաբար ապրում են ջրում, հասունները՝ ցամաքում։ Թրթուրները ձկների կեր են, որոշները՝ բրնձի վնասատուներ։

ՄԱԶԱԿԱՆ ԱԼԻՔՆԵՐ, փոքր երկ–յան ալիքներ հեղուկի մակերևույթի վրա (ծփանք)։ Մ. ա–ի դինամիկան բնութագրվում է մակերևութ. լարվածության ուժերով։ Մ. ա–ի երկ–յունը մի քանի *մմ*–ից 1–2 *սմ* է։

ՄԱԶԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ, երևույթների համախումբ, որոնք պայմանավորված են չխառնվող միջավայրերի (հեղուկ–հեղուկ կամ հեղուկ–գազ) մակերևութ. լարվածությամբ։ Մ. ե. են ֆազերի սահմանագծին *մազական ճնշման* առաջացումը, մազանոթներով հեղուկի բարձրանալը թրջման առկայությամբ (և իջնելը դրա բացակայության դեպքում), *մազական ալիքների* գոյացումը և այլ երևույթներ։

ՄԱԶԱԿԱՆ ՃՆՇՈՒՄ, 2 սահմանակից ֆազերի (օր.՝ մազանոթում գտնվող հեղուկի և գազի) ճնշումների տարբերությունը, որը պայմանավորված է ֆազերի բաժանման մակերևույթի կորացումով։

ՄԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ֆիզ.), մազանոթներով հեղուկի բարձրանալու և իջնելու հատկություն. պայմանավորված է նրա և շրջակա միջավայրի մակերևութ. լարվածությունների տարբերությամբ։

ՄԱԶԱԿԵՐՆԵՐ (Ischnbcera), փետրակերների կարգի մակաբույծ միջատների ընտանիք։ Երկ.՝ 0,8–10 *մմ*, թևեր չունեն։ Հայտնի է ավելի քան 200 տեսակ։ Ապրում են կաթնասունների բրդի մեջ՝ սնվելով մաշկի եղջերային շերտում, որոշները կրծում են այն։ Առանձին տեսակներ կապված են որոշակի տեր–կենդանիներին։

ՄԱԶԱՆՈԹԱՅԻՆ ՋՈՒԲ, ստորերկրյա ջրերի տեսակ, որը պահվում է լեռն. ապարների ծակոտիներում՝ մակերևութ. լարվածության ուժերով։

ՄԱԶԱՆՈԹՆԵՐ, **կապիլյարներ** (լատ.՝ capillaris – մազային), 1. շատ նեղ լուսանցքով խողովակիկներ, հաղորդակցվող ծակոտիների համակարգ (օր.՝ հանքապարներում, պենոպլաստներում ևն)։ 2. Մարդու և կենդանիների բոլոր հյուսվածքներով անցնող արյունատար մանրագույն անոթներ (տրամագիծը՝ 2,5–3,0 *մմ*). ցանց են առաջացնում հյուսվածքներն արյունով մատակարարող և արյունը հեռացնող երակների միջև։ Մ–ի պատերով ընթանում է գազերի և այլ նյութերի փոխանակություն արյան և հյուսվածքների միջև։ Ավշային Մ., ի տարբերություն արյունատար Մ–ի, բաղկացած է միայն էնդոթել. շերտից, թափանցում են գրեթե բոլոր օրգանները, դրանցով հյուսվածքներից դուրս են բերվում արյունատար Մ. չթափանցող սպիտակուցների կոլոիդային լուծույթները, օտար մասնիկները և բակտերիաները։

ՄԱԶԱՉՉՈ (Masaccio) Տոմազո դի Ջովանի դի Սիմոնե Կասսաի (1401–1428), իտալացի գեղանկարիչ։ Ֆլորենտ. դպրոցի ներկայացուցիչ, Վերածննդի արվ–ի հիմնադիրներից։ Գործերն աչքի են ընկնում լուսաստվերային ընդգծված կերպավորմամբ, մարմինների եռաչափությամբ, ընդհանրացված ձևերի մոնումենտալությամբ (Ֆլորենցիայի Սանտա Մարիա դել Կարմինե եկեղեցու Բրանկաչչիի կապելայի որմնանկարները, 1425–28)։

ՄԱԶԱՊԱՐԿԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ, **ֆոլիկուլիտ** (լատ.՝ folliculus – պարկ), մազապարկի ստաֆիլոկոկային բորբոքում։ Առաջացմանը նպաստում են մաշկի աղտոտումը, չնչին վնասվածքները, հարուկները, նյութափոխանակության խանգարումները, քրտնոտությունը ևն։ Առաջանում են մանր, թարախ. գլխիկով հանգույցներ, որոնք մի քանի օր անց չորանում են ու կեղևակալում, խորը բորբոքման դեպքում առաջանում են ցավոտ թարախաբշտիկներ, որոնք պատռվում են և թարախահոսում։

ՄԱԶԱՐԻՆԻ (իտալ.՝ Mazarini, ֆրանս.՝ Mazarin) Ջուլիո (1602–1661), կարդինալ՝ 1641–ից (ծագումով՝ իտալացի)։ 1643–ից՝ Ֆրանսիայի 1–ին նախարար։ Մ–ի շնորհիվ Ֆրանսիան Եվրոպայում հասել է քաղ. գերակայության։

ՄԱԶԴԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, կրոնափիլ. ուսմունք, որը մոտ է *մանիքեությանը*, տարածվել է Պարսկաստանում և հարա–

կից երկրներում վաղ միջնադարում (III դ.): «Մ.» է կոչվել Սասանյան պետության մեջ ժող. շարժումը (V–VI դդ.) գլխավորող Մազդակի անունով. ճնշել է Խոսրով I Անուշիրվանը: Ըստ Մ–յան հետևորդների՝ աշխարհի հիմքում պայքարն է 2 հակադիր ուժերի՝ բարու՝ լուսավոր սկզբի, և խավարի՝ չարի միջև. կոչ են արել պայքարել սոցիալ. անհավասարության դեմ, որը նույնացվել է չարիքին:

ՄԱԶԴԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, տես *Զրադաշտականություն*:

ՄԱԶԴԵԳ, հայկ. հեթանոս. տոմարի ամիսների 6–րդ օրվա անվանումը:

ՄԱԶԵՒ, կաթնամսաբրդատու, կոպտաբուրդ ոչխարների հնագույն տեղ. (պորրիգեն) ցեղ: Ստեղծվել է Հայաստանում՝ ժող. ընտրասերման միջոցով: Տարածված է Գեղարքունիքի, Կոտայքի, Արագածոտնի, Շիրակի մարզերում: Մաքիների միջին կ. զ. 50–60 *կգ* է, խոյերինը՝ 60–100 *կգ*, մնդավի միջին բարձր.՝ 57–79 *սմ*, իրանի երկ.՝ 51–76 *սմ*, կաթնատվությունը՝ 60–70 *կգ*: Ոչխարները խոշոր են, ունեն ճարպապոչ: 1 խուզից ստացվում է 1,2–1,6 *կգ* բուրդ:

ՄԱԶԵՐ (Mather) Ջոն Կրոմվել (ծ. 1946), ամերիկացի աստղաֆիզիկոս: Աշխ–ները վերաբերում են տիեզերագիտ–յանը, ԵԿ աստղագիտ–յանը, ֆուրյե սպեկտրագրությանը: Ղեկավարել է FIRAS սպեկտրաչափի ստեղծման՝ COBE տիեզ. աստղադիտարանի համար, և դրանով կատարվող հետազոտ. աշխ–ները: Բացահայտել է, որ մնացորդային ճառագայթման սպեկտրը համապատասխանում է բացարձակ սև մարմնի սպեկտրին:

Նորելյան մրց. (2006, Ջ. *Մմութի* հետ):

ՄԱԶԵՐ Քոթոն (1663–1728), ամերիկացի գրող, աստվածաբան: Հեղինակ է հմայության (հեթանոս. մոգություն) հետաձգման մասին «Անտեսանելի աշխարհի հրաշքները» (1693) կրոնահրապարակախոս. ժող–ի, «Քրիստոսի վեհությունը Ամերիկայում» (մաս 1–7, 1702), «Բարության մղում» (1710), «Ամերիկյան Աստվածաշունչ» (1693–1728) երկերի:

ՄԱԶԵՐ, մարդու և կաթնասուն կենդանիների մաշկի եղջերային հավելում: Պարունակում են գույնը պայմանավորող գունակներ: Շատ կաթնասունների (ինգեղջյուր, փիղ) մազածածկույթն ունի ստորին հարկ՝ ենթաբուրդ: Մազը բաղկացած է ցողունից, արմատից և ավարտվում է մազարմատի կոճղեզով: Մազարմատն ու կոճղեզը պարփակված են մազապարկի մեջ:

ՄԱԶԵՐ [(անգլ.՝ MASER, Microwave Amplification by Stimulated Emission of Radiation – միկրոալիքների ուժեղացում ստիպող. ճառագայթման միջոցով) արտահայտության անգլ. բառերի սկզբնատառերից)], ԳՔՀ ռադիոտիրույթի քվանտ. ուժեղացուցչի և քվանտ. գեներատորի ընդհ. անվանումը: Կիրառվում է տեխնիկայում (մասնավորապես՝ տիեզ. կապում), ֆիզ. հետազոտություններում, նաև որպես հաճախությունների քվանտ. չափորոշիչներ:

ՄԱԶԻՆԱ (Masina) Ջուլիետտա (1921–1994), իտալացի դերասանուհի: Ֆ. *Ֆելինիի* կինը: Մ–ի արվ–ին հատուկ գրոտեսկի և քնարականության միահյուսումը, նուրբ հոգեվիճակը բացահայտվել են ամուսնու ֆիլմերում («Վարիետեի լույսեր», «Սպիտակ շեյխ», «Ճանապարհ», խորհրդ. էկրանին՝ «Նրանք թափառում էին ճանապարհներին», «Կաբիրիայի գիշերները», «Ջուլիետան և ոգիները», «Ջինջեր և Ֆրեդ» ևն):

ՄԱԶԻՆԻ (Masini) Անջելո (1844–1926), իտալացի երգիչ (տենոր): Բելկանտոյի ներկայացուցիչ: 1867–ից հանդես է եկել Բոլոնիայի, Վենետիկի, Հռոմի, Պալերմոյի և այլ օպեր. թատրոններում: Երկացանկում՝ քնար. և դրամատիկ. դերերգեր (Ռադամես՝ Ջ. Վերդիի «Այիդա», Ալմավիվա՝ Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», Ռաուլ՝ Ջ. Մեյերբերի «Հուգենոտներ», ևն):

ՄԱԶԼՈՒՄՈՎ Ավետիք Լուկիանի (1896–1972), կենսաբան–ընտրասերումնաբան: Գդտ. գիտ. դ–ր (1978), պրոֆ. (1949): ՀամԳԴԱ ակադ. (1956): ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1960): Սոց. աշխ. հերոս (1965): Աշխ–ները վերաբերում են շաքարի ճակնդեղի կենսբ–յան, սերմնաբուծության, ընտրասերման և ագրոտեխնիկայի հարցերին:

ԽՍՀՄ Պետ. (1946, 1952), Լենինյան (1965) մրց–ներ, Լենինի և ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշաններ:

ՄԱԶՄԱՆՅԱՆ Արմեն Աղասու (1960–2014), ռեժ., դերասան: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2009): 1988–ից՝ «Գոյ» թատրոնի հիմնադիր–ղեկ., 2011–ից՝ Երևանի Թատրոնի և կինոյի ինստ–ի ռեկտոր: Բեմադրել է Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս», Լ. Պիրանդելլոյի «Վեց պերսոնաժ հեղինակ որոնելիս», «Շղթայված Պրոմեթևս» և այլ գործեր: Նկարահանվել է «Ընտրություն», «Տղամարդկային գործ», «Ճակատագիր», «Ես եմ» ֆիլմերում: Մասնակցել է Ղարաբաղյան ազատագր. պատերազմին, եղել «Մուշ» զորամիավորման ջոկի հրամ.:

ՀՀ ՊՆ «Գարեգին Նժդեհ» շքանշան (2010), Ֆրիտյոֆ Նանսեն հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2008), Թատրոն–ստուդիաների համամիութ. փառատոնի 1–ին (1987, Ալմա Աթա), Հանրապետ. փառատոնի 1–ին (1989, Երևան) մրց–ներ, ՀՀ ՄՆ ոսկե (2009), ՀՀ «Մարտական ծառայության համար» (2012) մեդալներ:

ՄԱԶՄԱՆՅԱՆ Մարտին (Մարտիրոս) Սարգսի (1899–1987), կոմպոզիտոր, խմբավար: ՀԽՍՀ ժող. արտիստ (1965): Հայֆիլհարմոնիայի տնօրեն ու գեղ. ղեկ. (1950–54), Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանի տնօրեն (1954–62): ՀԽՍՀ քաղաքներում, Թբիլիսիում, Մոսկվայում հիմնադրել և ղեկավարել է երգչախմբեր: Հեղինակ է «Ճուտիկ» մանկ. օպերայի, սիմֆ., կամեր–գործիք. մանկ. գործերի, խմբերգերի, երգերի, ռոմանսների: Մշակել է ժող. երգեր: Գրել է «Խմբավարական արվեստ» (1961) աշխ–ը:

ՄԱԶՄԱՆՅԱՆ Միքայել Դավթի (1899–1971), ճարտ.: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1959), ՀԽՍՀ վաստ. ճարտ. (1968): Հեղինակ է Կապանի (1930), Նորավանի, Սիսիանի, Տաթևի, Շինուհայրի, Վանաձորի (1929–30, 1934–37), Գյումրիի (1932–37) գլխ. հատակագծերի, համահեղինակ է Երևանում՝ Կառուցողների ակումբի (1928–29, այժմ՝ Ռուս. թատրոն և Սպորտկոմիտե), Պետապի տան (1930), Կենտր. հանրախանութի (1936–37), Գրապալատի համալիրի (1935–40, շին–յունն ավարտվել է 1960–ին) ևն: 1939–54–ին (Գևորգ *Քոչարի* հետ) նախագծել է Նորիլսկի և Դուդինկայի (Ռուսաստան) գլխ. հատակագծերը, 1955–68–ին գլխավորել Երևանի մի քանի թաղամասերի հատակագծման նախագծերը: ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի և «Պատվո նշան» շքանշաններ:

ՄԱԶՄԱՆՅԱՆ Մկրտիչ Արամի (1910–1977), հոգեբան: Հոգեբ. գիտ. դ–ր (1965), պրոֆ. (1966): ԽՍՀՄ ՄԳԱ ակադ. (1967): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1969): Զբաղվել է ստեղծագործ. գործընթացում անգիտակցականի նշանակության, հոգեբ–յան պատմության և տեսության խնդիրներով:

ՄԱԶՄԱՆՅԱՆ Պավել Արտյոմի (ծ. 1965), նեոնատոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (2014), պրոֆ. (2017): Աշխ–ները վերաբերում են անհաս նորածինների բուժման և խնամքի մեթոդների բարելավմանը:

ՄԱԶՈՒԽԻԶՄ (Լ. *Զախեր–Մազոխի* անունով), սեռ. աղավաղում, որի դեպքում հեշտանքի զգացումը (օրգազմ) առաջանում է զուգընկերոջ կողմից ֆիզ. տանջանքների և ստորացման ենթարկվելու միջոցով:

ՄԱԶՈՒԹ, մուգ շագանակագույն մածուցիկ հեղուկ՝ բենզինը, լիգրոինը, կերոսինը և դիզել. վառելանյութը նավթից ուղղակի թորելով կամ կրեկինգով բաժանելուց հետո ստացվող մնացորդը: Խտ.՝ 0,89–1,00 *գ/սմ*³, այրման ջերմությունը՝ 39–41 *ՄՋ/կգ*: Օգտագործում են որպես հեղուկ վառելանյութ, նաև որպես հումք՝ քսայուղեր, կուպր, կոքս, բենզին, դիզել. վառելանյութ ստանալու համար:

ՄԱԶՈՒՉՉՈ ՍԱԼԵՌԻՏԱՆՑԻ (Masuccio Salernitano, Տոմազո Գուարդատի, մոտ 1415–մոտ 1475), իտալացի գրող: «Նովելինո» (հրտ.՝ 1476) ժող–ը, որը բովանդակում է երգիծ., հումոր. և ողբերգ. նովելներ, Վերածննդի շրջանի արձակի ամենահայտնի հուշարձաններից է, որտեղ վերահմաստավորել է Ջ. Բոկաչչոյի «Դեկամերոն»–ի ժանրը:

ՄԱԶՈՒՐ (Masur) Կուրտ (1927–2015), գերմանացի դիրիժոր: 2002–07–ին՝ Լոնդոնի ֆիլհարմոնիկ, 2002–08–ին (միաժամանակ)՝ Ֆրանսիայի ազգ. նվագախմբերի գլխ. դիրիժոր: Ճանաչվել է Լ. վան Բեթհովենի, Ա. Բրուքների, Ռ. Շումանի, Ֆ. Մենդելսոնի երկերի մեկնաբանմամբ:

ԳԴՀ Ազգ. (1970, 1982), Ռ. Շումանի անվ. (1981) մրց–ներ:

ՄԱԶՈՒՐԵՆԿՈ Ալեքսանդր Եֆիմովիչ (1917–2004), խորհրդ. օդաչու (1942, 1944), ավիացիայի գեն–մայոր (1962): ԽՄ հերոս: ՀՄՊ–ի ժամանակ՝ Հս. և Սևծով. նավատորմի ավիացիայում գնդի հրամ., կատարել է շուրջ 300 մարտ. թռիչք: Անձամբ խորտակել է հակառակորդի 8 նավ, իսկ 22–ը՝ խմբի կազմում:

ՄԱԶՈՒՐԿԱ (լեհ.՝ mazurek, < mazur, Մազովիայի բնակիչների՝ մազուր անվանումից), լեհ. ժող. պար: Երաժշտ. չափը՝ 3/4 կամ 3/8, տեմպը՝ արագ: XIX դ–ում տարածվել է Եվրոպայում՝ որպես պարահանդես. (նաև գործիք.) պար: Ձևն օգտագործել են Ֆ. Շոպենը, Պ. Ի. Չայկովսկին, Ա. Կ. Լյադովը, Ա. Ն. Սկրյաբինը և ուր.:

ՄԱԶՈՒՐՈՎԿ Յուրի Անտոնովիչ (1931–2006), ռուս երգիչ (բարիտոն): ԽՍՀՄ ժող. արտիստ (1976): 1963–2001–ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մեներգիչ (Ռիգոլետտո՝ Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», Եվգենի Օնեգին՝ Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», ևն): Մեներգիչների՝ «Պրահայի գարուն» (2–րդ մրց., 1960, Պրահա), Ջ. Էնեսկուի անվ. (3–րդ մրց., 1961, Բուխարեստ), Մ. Ի. Գլինկայի անվ. համամիութ. (2–րդ մրց., 1962, Մոսկվա) և այլ միջազգ. մրցույթների դափնեկիր:

ՄԱԶՈՒՐՍԿԻ (Mazursky) Պոլ (Իրվին, 1930–2014), ամերիկացի ռեժ., դերասան, պրոդյուսեր: 1953–ից, որպես դերասան,

հանդես է եկել կինոյում, աշխատել թատրոնում և հեռուստատեսությունում: Նկարահանել է «Բորը, Քերոլը, Թեդը և Էլիսը» (1969), «Ալեքսը հրաշքների երկրում» (1970), «Վիլլի և Ֆիլ» (1980), «Թշնամիներ. սիրո պատմություն» (1989, բոլորի սցենարիստն է, մի մասի՝ պրոդյուսերը) և այլ ֆիլմեր:

ՄԱԶՔՈՒԹՆԵՐ, **մասքութներ, մասսագետներ**, Անդրկասպյան և Մերձաբալյան տափաստաններում բնակվող հնագույն վաչկատուն ցեղերի հավաք. անվանումը: Ըստ հայկ. աղբյուրների՝ Մ. Այսրկովկասի հս–արլ–ում I դ–ում ստեղծել են վտմ, որը կոչվել է Մասքթաց (Մազքթաց) աշխարհ՝ Չող (Չոր, Ճոր) կենտրոնով, որի համար այդ երկրամասը կոչվել է նաև Չողա (Ճորա, Չորա) երկիր:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ (հուն.՝ mathematike, < mathema – գիտություն), գիտ–յուն տարած. ճևերի և քանակ. հարաբերությունների մասին: Մինչև XVII դ–ի սկիզբը գիտ–յուն էր հիմնականում թվերի, սկալյար մեծությունների և համեմատաբար պարզ երկրչփ. պատկերների մասին: Այս ժամանակաշրջանում են առաջացել թվար–յունը, երկրչփ–յունը, ավելի ուշ՝ հանրահաշվի, եռանկյունաչափության և մաթ. վերլուծության առանձին եղանակներ: XVII և XVIII դդ–ում բնագիտ–յան ու տեխնիկայի զարգացումը հանգեցրել են Մ–ում շարժման և փոփոխման գաղափարների ներմուծմանը՝ ամենից առաջ փոփոխ. մեծությունների ու նրանց միջև ֆունկցիոնալ կախումների ձևով, որը հանգեցրել է վերլուծ. երկրչփ–յան, դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվների ստեղծմանը: XVIII դ–ում ստեղծվել և զարգացել են դիֆերենցիալ հավասարումների տեսությունը, դիֆերենցիալ երկրչփ–յունը և այլ բնագավառներ: Երկրչփ–յունն ուսումնասիրում է «տարածությունները», որոնց մասնակի դեպքն է Էվկլիդեսյան տարածությունը: Զարգանում են նոր գիտաճյուղեր՝ կոմպլեքս փոփոխականի ֆունկցիայի, խմբերի տեսությունները, պրոյեկտիվ և ոչ էվկլիդեսյան երկրչփ–յունը, բազմությունների տեսությունը, մաթ. տրամար–յունը, հավանականությունների տեսությունը, ֆունկցիոնալ վերլուծությունը ևն: XIX–XX դդ–ում Մ–ի հաշվող. մեթոդները վերաճել են ինքնուրույն գիտաճյուղի՝ հաշվող. Մ–ի, և հանգեցրել ***հաշվողական մեքենաների*** ստեղծմանը: Մ–ի զարգացման պահանջմունքները, գիտ–յան տարբեր բնագավառների «մաթեմատիկացումը», հաշվող. տեխնիկայի արագ առաջընթացը պայմանավորել են նոր գիտաճյուղերի՝ խաղերի տեսության, տեղեկագիտ–յան, գրաֆների տեսության, դիսկրետ Մ–ի, լավագույն կառավարման տեսության առաջացումը:

Հայ. մաթ. առաջին ձեռագրերը (VII դ.) ***Անանիա Շիրակացու*** թվար–յան դասագրքի մեզ հասած 5 մասերն են և ***խրախճանականները***: Անանիա Շիրակացու աղյուսակները համարվում են աշխարհում հայտնի համանուն աղյուսակներից հնագույնը: Մաթ. կրթության բնագավառում Անանիա Շիրակացու ավանդույթները շարունակվել են և հատկապես բարձր մակարդակի հասել XI–XIV դդ–ում միջնադար. հայկ. համալսարաններում: Հայկ. մաթ. դպրոցը լուրջ զարգացում է ապրել Արտաշես Շահինյանի, Մխիթար Ջրբաշյանի, Սերգեյ Մերգելյանի և ուր. աշխ–ների շնորհիվ:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՊԱՅՈՒՄԱԿՆԵՐ, հաշվող. օժանդակ միջոցներից, որոնք օգտագործվում են տարբեր հաշվարկներում: Փոփոխականների որոշ արժեքների համար պարունակում են որոշակի ֆունկցիաների արժեքների համախումբ: Օր.՝ **բազմապատկման** հանրահայտ աղյուսակները տալիս են $y = x_1x_2$ ֆունկցիայի, լոգարիթմ. աղյուսակները՝ $z = lg\ x$ ֆունկցիայի, եռանկյունաչափ. աղյուսակները՝ $z = sin\ x$, $z = cos\ x$, $z = tg\ x$ ֆունկցիաների արժեքները: Գոյություն ունեն նաև ավելի բարդ աղյուսակներ: Դեռևս VII դ–ում թվար. գործողությունների աղյուսակներ է առաջարկել ***Անանիա Շիրակացին***:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ֆիզ. աշխարհագրության բաժին. ուսումնասիրում է Երկրի (որպես մոլորակի) ձևը, մեծությունն ու շարժումը: Լայն կիրառություն ունի քարտեզագրության և գեոդեզիայի մեջ:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ծրագրերի, նկարագրությունների և հրահանգների համախումբ, որոնք ապահովում են համակարգչի ավտոմատ աշխ–ը: Տարբերում են ընդհ. (տվյալ համակարգչով հաշվող. շարժընթացի կազմակերպման համար) և հատուկ (կոնկրետ խնդիրների լուծման համար) Մ. ա–ներ:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԻՆԴՈՒԿՑԻԱ, մաթ. ապացուցման կամ բնորոշման ընդհ. սկզբունք, ըստ որի՝ կամայական P պնդումը համարվում է ապացուցված $A_1, A_2, \ldots$ բոլոր օբյեկտների համար, եթե ա. P–ն ապացուցված է A_1–ի (ինդուկցիայի հիմք) համար, բ. ապացուցված է, որ եթե՝ P–ն տեղի ունի ինչ–որ A_n–ի համար, ապա այն տեղի ունի նաև A_{n+1}–ի համար (ինդուկցիոն քայլ):

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ, ***մաթեմատիկայի*** բաժին. ուսումնասիրում է որոշակի սահմանափակումներով (հավասարումներով կամ անհավասարումներով) բնութագրվող բազմություններում ֆունկցիայի արժեքի էքստրեմումները գտնելու խնդիրների լուծման տեսությունն ու մեթոդները: Եթե ուսումնասիրվող ֆունկցիան գծային է (1–ին աստիճանի) և բազմությունում տրված է գծային հավասարումներով ու անհավասարումներով, ապա Մ. ծ–ման համապատասխան բաժինը կոչվում է գծային ծրագրավորում:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՀԻ Երևանի, էլեկտրոն. հաշվող. տեխնիկայի գիտարտադր. կենտրոն: Հիմնադրվել է 1956–ին: Զբաղվել է 4 սերնդի ԷՀՄ–ների համալիրների նախագծման ու ստեղծման հարցերով: 1993–ից մասնագիտացել է բարդ կառավարման տեղեկատվ. համակարգերի հատուկ նշանակության սարքավորումների և համակարգերի մշակման ոլորտում: Տնօրեններ՝ Սերգեյ Մերգելյան, Գուրգեն Սարգսյան, Ֆադեյ Սարգսյան, Միհրան Սեմերջյան, Հակոբ Սարգսյան, Սարգիս Սարգսյան, Գագիկ Հովհաննիսյան, Արսեն Թառոյան (2011–ից):

Լ.Ենինյան (1980,1983), ԽՍՀՄ (1971, 1980, 1983), ՀԽՍՀ (1974, 1976) Պետ., ՀամլԿԵՄ (1978, 1979, 1980), ՀԼԿԵՄ (1971) մրց–ներ:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ, պայման. նշաններ, որոնք նախատեսված են մաթ. օբյեկտներ, հասկացություններ և առաջադրանքներ գրառելու համար. օր.՝ $+, -, =, >$ (մեծ է), $\sqrt{}$ (արմատ), sin (սինուս), $\int$ (ինտեգրալ) ևն: Մ. ն. առաջացել են մ. թ. 3500 տարի առաջ, եղել են նաև ***թվանշաններ***: Ժամանակակից Մ. ն–ի ստեղծումը վերագրում են XIV–XVIII դդ–ին:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՊԻՐՈՒՍՆԵՐ, Հին Եգիպտոսի մաթ. գիտ–յան հուշարձաններ, վերաբերում են Միջին թագավորության շրջանին (մ. թ. ա. մոտ XXI–XVIII դդ.): Առավել հայտնի են **Ռինդի պապիրուսը** (եգիպտագետ Գ. Ռինդի անունով, Բրիտ. թանգարանում) և **Մոսկովյան պապիրուսը** (Ա. Ս. Պուշկինի անվ. կերպարվ–ի թանգարանում):

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՍՊԱՍՈՒՄ, ***վիճակագրության*** և ***համանականությունների տեսության*** մեջ x ***պատահական մեծության*** բաշխման միջին արժեքը: Պարզագույն դեպքում, երբ x–ը կարող է ընդունել միայն $x_1, x_2, \ldots x_n$ վերջավոր թվով արժեքներ՝ $P_1, P_2, \ldots P_n$ հավանականություններով, x մեծության Մ. ս. կոչվում է $Ex = x_1P_1 + x_2P_2 + \ldots + x_nP_n$ արտահայտությունը:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ, մաթ–ի բաժին. ուսումնասիրում է համակարգման մաթ. մեթոդների և գիտ. ու գործն. հետևությունների համար վիճակագր. տվյալների օգտագործման հարցերը: Մ. վ–ում հաճախ կիրառում են հավանականությունների տեսության մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս գնահատելու սահմանափակ վիճակագր. տվյալների հիման վրա կատարված եզրակացությունների հուսալիությունն ու ճշգրտությունը:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **դեդուկտիվ տրամաբանություն**, ներառում է դատողությունների (հետևությունների) հետազոտման եղանակների մաթ. մեթոդները՝ դատողությունների դեդուկտիվ եղանակների մաթ. տեսությունները: Մ. տ. է կոչվում նաև մաթ–ում կիրառվող տրամար–յունը:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԻԶԻԿԱ, **ֆիզիկական երևույթների մաթեմատիկական մոդելների տեսություն**, զբաղվում է մաթ–ին և ֆիզիկային հարակից խնդիրներով: Երբեմն «Մ. ֆ.»–ի տակ հասկանում են ֆիզիկայում հանդիպող դիֆերենցիալ հավասարումների հետ կապված խնդիրների ուսումնասիրման և լուծման մաթ. մեթոդները:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀՀ ԳԱԱ, գիտ. հիմնարկ Երևանում: Կազմակերպվել է 1971–ին՝ ՀԽՍՀ ԳԱ մաթ–ի և մեխանիկայի ինստ–ի բաժանումով: Ուսումնասիրության հիմն. ոլորտներն են կոմպլեքս անալիզը, իրական անալիզը, հավանականությունների տեսությունը, դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումները, մաթ. ֆիզիկան: Ինստ–ի աշխ–ներում զգալի ավանդ ունեն Սերգեյ Մերգելյանը, Ռաֆայել Ալեքսանդրյանը, Ռուբեն Համբարձումյանը, Անրի Ներսիսյանը և ուր.: Տնօրեններ՝ Մխիթար Ջրբաշյան, Նորայր Առաքելյան, Ալեքսանդր Թալալյան, Բագրատ Բատիկյան, Վալերի Մարտիրոսյան, Ռաֆայել Բարխուդարյան (2012–ից):

ՀամլԿԵՄ (1970), ՀԼԿԵՄ (1982) մրց–ներ:

«ՄԱԹԵՄԱՏԻԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՈՒՄ», գիտամեթոդ. հանդես (2005–ից, Երևան): ՀՊՃՀ–ի հրտ–յուն: Հիմնադիր–խմբ.՝ Վանիկ Զաքարյան:

«ՄԱԹԵՄԱՏԻԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ», գիտամեթոդ. հանդես (1998–ից, Երևան): ՀՀ

ԿԳՆ Կրթության ազգ. ինստ-ի հրտ-յուն: Խմբ.՝ Համլետ Միքայելյան:

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Աշոտ Վարազդատի (ծ. 1973), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (2012), պրոֆ. (2014): Աշխ-ները վերաբերում են դրամավարկ. ու հարկ. քաղ-յան, բանկային գործին, ֆին. կառավարման հարցերին:

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Արշակ Կառլենի (ծ. 1956), երկրաֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (2003): Աշխ-ները վերաբերում են էլեկտրահետախուզման եղանակների տես. դրույթների զարգացմանն ու կատարելագործմանը, լեռն. ապարների էլ. անհամասեռության հետազոտմանը:

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Արտաշես Ալեքսանդրի (1904–1999), բուսաբույծ: Գղտ. գիտ. դ-ր (1948), պրոֆ. (1961): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1971-ից): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): Աշխ-ները վերաբերում են դաշտ. մշակաբույսերի մշակության և ՀՀ-ում կերի կայուն հիմքի ստեղծման հարցերին:

Լենինի, ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշաններ:

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Արտաշես Սիմոնի (1922–2004), ձեռագրագետ, պատմաբան: Պատմ. գիտ. թեկնածու (1970): Կարևն ***Մաթևոսյանի*** հայրը: Հեղինակ է «Գլաձորի համալսարանը միջնադարյան Հայաստանի լուսավորության կենտրոն» (համահեղ., 1984), «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» չորրորդ գիրքը» (1995), «Մեծոփավանքի գրչության կենտրոնը (ԺԲ–ԺԵ դդ.)» (1997), «Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր» (1998), «Գրիգոր Ծերենց Խլաթեցի» (համահեղ., 2000) աշխ-ները, կազմել է V–XIII դդ-ի հայ. ձեռագրերի հիշատակարանները (1984, 1988): ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» շքանշան (1996):

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Կարեն Արտաշեսի (ծ. 1958), պատմաբան, հայագետ, աղբյուրագետ: Պատմ. գիտ. դ-ր (2008), պրոֆ. (2015): Արտաշես Ս. ***Մաթևոսյանի*** որդին: 1994–96-ին՝ «Լուսավորիչ», 1997–2000-ին՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթերի գլխ., 2002–08-ին՝ «Հայ արվեստ» հանդեսի հիմնադիր և գլխ. խմբ.: Հեղինակ է «Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը» (1997, «Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները», 2009, «Հավուց-թառի վանքը», 2012, «Անիի ազնվականության պատմությունից և երեք Գրիգոր Սագիստրոս», 2015, և այլ աշխ-ների):

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Հասմիկ Հենրիկի (ծ. 1949), սրտաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1997), պրոֆ. (2009): Աշխ-ները վերաբերում են սրտամկանի նյութափոխանակության և էլ. ակտիվության խանգարումների փոխկապակցության հարցերին և սրտամկանի տարատեսակ իշեմիկ հիվանդությունների ժամանակ դրանց փոփոխություններին:

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Հռիփսիմե Շավարշի (ծ. 1950), կենսաբան: Կենսբ. գիտ. դ-ր (2000), պրոֆ. (2002): Աշխ-ները վերաբերում են տարբեր ախտաբան. պայմաններում (հատկապես՝ սրտամկանի փորձարար. ինֆարկտի ժամանակ) սրտի և թոքերի արյան միկրոշրջանառության խանգարումներին ու դրանց շտկման ուղիներին:

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Հրանտ Իշխանի (1935–2002), գրող: Հրաչյա ***Մաթևոսյանի*** եղբայրը: 1996–2001-ին՝ ՀԳՄ նախագահ: Պատկերել է հայ գյուղը, անդրադարձել անհատի հոգևոր-բարոյական նկարագրին, արծարծել գոյարան. և բարոյահոգեբ. բարդ խնդիրներ: Հեղինակ է «Օգոստոս» (1967), «Մեր վազքը» (1978), «Ծառերը» (1978), «Քո ցեղը» (ռուս., 1984) և այլ վիպակների ու պատմվածքների, «Սպիտակ թղթի առջև» (2004) հոդվածների, «Ես ես եմ» (2005) հարցազրույցների, «Տերը» (1983) կինովիպակների ժող-ների, «Չեզոք-գոտի» (1983) պիեսի, հոդվածների: Նրա երկերի հիման վրա և սցենարներով նկարահանվել են «Մենք ենք, մեր սարերը» (1969), «Աշնան արև» (1977), «Տերը» (1984) կինոնկարները:

ՀԽՍՀ (1983), ԽՍՀՄ (1984) Պետ. մրց-ներ, ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան (1996):

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Հրանտ Հենրիկի (ծ. 1947), պլազմայի ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1997): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2010), ակադ. քարտուղար (2011): ՀՀ ԳԱԱ գիտ-յան զարգացման հիմնադրամի տնօրեն (2007-ից): Աշխ-ները վերաբերում են պլազմայի տաքացման հարցերին, պլազմայի և պլազմանման միջավայրերի, լիցքավորված մասնիկների փնջերի ու սցենարային էլեկտրամագնիս. դաշտերի փոխազդեցություններին:

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Հրաչյա Իգնատի, ***Հրաչօ*** (1937–2016), արձակագիր, հրապարակախոս: Հրանտ Ի. ***Մաթևոսյանի*** եղբայրը: Հեղինակ է «Մահկալներ» (1977), «Բարի մարդկանց հովիտը» (1982), «Մոլորյալ ժամ» (1999), «Տուն մոր համար» (2003) պատմվածքների ու վիպակների ժող-ների, «Լքված ջրաղացը» (2007), «Ոսկեմատյան Դրմբոն» (2008), «Հարցերի երկիր Հայաստանս» (2010) և այլ երկերի:

ԼՂՀ Եղիշեի (1992, 2003), ՀԳՄ Մ. Նալբանդյանի (2007), Վ. Անանյանի (2012) անվ. մրց-ներ, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2007, 2012):

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Շավարշ Մաթևոսի (1895–1969), կենսաբան-նախակենդանաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1940), պրոֆ. (1947): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1954): Աշխ-ները վերաբերում են ամեոբիազի մակաբուծաբանության և համաճարակաբանության, մակաբույծ նախակենդանիների հետազոտման, ընդհ. կենսբ-յան խնդիրներին: Նախակենդանաբանների համամիութ. ընկ-յան հայկ. բաժանմունքի նախագահ (1967–69):

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Պարոնիկ (1836–1926), վիրաբույժ: Մշակել է ծաղկի և դեղին տենդի համաճարակների դեմ պայքարի միջոցառումներ: Կ. Պոլսի հիվանդանոցներում առաջինն է ներդրել Դ. Լիստերի մշակած հականեխության սկզբունքները: 1873-ին՝ Կ. Պոլսի Կայսեր. բժշկ. ընկ-յան պատվ. անդամ, ապա՝ ատենապետ, Կ. Պոլսի հայկ. բժշկ. ընկ-յան հիմնադիր-նախագահ (1912):

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Պարույր Ավետիսի (1928–2015), ավտոմատիկայի և տելեմեխանիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1971), պրոֆ. (1976): Սոց. աշխ. հերոս (1993): Աշխ-ները վերաբերում են հաշվող. մեքենաների նախագծման, գազատրանսպորտ. համակարգերի ավտոմատացման, կառավարման համակարգերի նախագծման, էլ. և գազատրանսպորտ. համակարգերի մոդելավորման հարցերին:

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Պարույր Հաբեթնակի (1907–1983), մետաղագետ: Սոց. աշխ. հերոս (1967): 1940–43-ին՝ Վոլգոգրադի «Կրասնի Օկտյաբր» մետաղագործ. գործարանի գլխ. ճարտարագետ, 1943–77-ին՝ տնօրենն, 1972–78-ին՝ «Ինտերմետալ» բյուրոյի տնօրենն: 1985-ին «Կրասնի Օկտյաբր» գործարանում սահմանվել է Մ-ի անվ. մրց.: Լենինի (4), ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (3), Հոկտ. հեղ-յան շքանշաններ:

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Ռաֆայել Իվանի (1932–2002), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1991): Աշխ-ները վերաբերում են միջնադար. Հայաստանի պատմությանը, մասնավորապես՝ Բագրատունիների թագավորության պետ. կառուցվածքին ու վարչ. կարգին և հայկ. զինանշանների (հերալդիկա) հետազոտությանը:

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Ռաֆայել Հովհաննեսի (1926–1985), ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դ-ր (1966), պրոֆ. (1972): Ցույց է տվել, որ ռեակցիայի արգասիքի հատկությունները կախված են ելանյութի մակրոմոլ-ների կազմության առանձնահատկություններից: Երևույթն անվանվել է «Նյութի ժառանգականություն», իսկ դրանց փոխանցումը քիմ. տարբեր գործողություններով՝ «հիշողություն»:

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Ռաֆայել Ռուբենի (1924–1994), շին. մեխանիկայի և կիրառ. մաթ-ի բնագավառների գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1963), պրոֆ. (1978): Աշխ-ները վերաբերում են կայունության որակ. տեսության, ձողերի համակարգերի տատանումների, տեխ. գիտ-յուններում մաթ-ի կիրառման հարցերին:

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Ռուբեն Մացակի (ծ. 1942), երգիչ: Պրոֆ. (1996): ՀՀ ժող. արտիստ (1978): 1961–92-ին՝ ՀՀ հեռուստառադիոպետկոմի ժող. գործիքների անսամբլի մենակատար (1996-ից՝ գեղ. ղեկ.), 1992–96-ին՝ «Աստղեր» անսամբլի գեղ. ղեկ. և մենակատար: Երգացանկում՝ հայկ. ժող., աշուղ., արդի հայ կոմպոզիտորների երգեր, ռոմաններ են: Հայ երգարվ-ի միության նախագահ (1999-ից):

Շերամի երգերի լավագույն կատարողների հանրապետ. մրցույթի 1-ին մրց. (1961, Երևան), ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2011), «Պատվո» (2016) շքանշաններ, «Մովսես Խորենացի» (1998) մեդալ: Երևանի պատվ. քաղաքացի (2015):

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Սարգիս Ղուկասի (1924–1992), ճարտ.: Ճարտ-յան թեկնածու (1974): Հեղինակ է Երևանում Հայֆիլմ կինոստուդիայի շենքի վերակառուցման (1978), համահեղ.՝ բնակելի տան («Պիոներ» կինոթատրոնով), Գավառում՝ հյուրանոցի (1950–70-ական թթ.) նախագծերի:

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Վիլհելմ Հարությունի (1931–2001), արվեստաբան: Արվեստագիտ. թեկնածու (1963): Հեղինակ է «Սեդրակ Առաքելյան» (1963), «Հակոբ Կոջոյան. Արվեստը» (1971), «Մարտիրոս Սարյանի էսթետիկական հայացքները» (1980), «Մարտիրոս Սարյանի գրքային նկարազարդումները» (1980), «Մարգարե» (1990), «Երեք կիսադեմ» (2002), «Հակոբ Կոջոյան» (2003) և այլ աշխ-ների:

ՄԱԹԻՆԳԼԻ (Mattingly) Թոմաս Քենետ (ծ. 1936), ամերիկացի աստղագնաց: ՌԾՈՒ 3-րդ կարգի կապիտան: «Ապոլոն-16» տիեզերանավով (1972-ի ապրիլ) և «Սփեյս Շաթլ» փոխադր. տիեզերանավով (1982-ի հունիս–հուլիս, 1985-ի

հունվ.) բազմակի թռիչքներ է կատարել Լուսնի շուրջը:

ՄԱԹԻՈ (Mathieu) Միրեյ (ծ. 1946), ֆրանսիացի էստրադ. երգչուհի-շանսոնիե: Մ-ի կատարող. ոճը ձևավորվել է Մ. *Շևալիեի* և Է. *Պիաֆի* ազդեցությամբ: Ջուգերգեր է կատարել Շառլ *Ազնավուրի* հետ («Հավերժական սեր» ևն): Նկարահանվել է ֆիլմերում:

ՄԱԹՀՈՒՐԱ (Mathura), **Մաթրա**, ք. Հս. Հնդկաստանում՝ Ուտտար Պրադեշ նահանգում՝ Ջամնա գետի ափին: Բն.՝ 455 հզ. (2011): Տրանսպորտ. հանգույց է: Հայտնի է բուդդ. հին հուշարձաններով (մ. թ. ա. IV–III դդ.) և հնդուական տաճարներով:


ՄԱԹՈՍՅԱՆ Ռոբերտ Սամվելի (ծ. 1945), խմբ., սցենարիստ: 1969–90-ին՝ *«Ֆիլմ»* թերթի հիմնադիր-խմբ., 1991–93-ին՝ «Գեղարվեստ» պարբ-ի խմբ., 2008–12-ին՝ *«+ Կինո»* հանդեսի համախմբ., 2012-ից՝ գլխ. խմբ.: Հեղինակ է «Հարցազրույց Ձեզ համար» (1977), «Հենրիկ Մալյան» (1982), «Հարդագողի կինոճանապարհով» (2007), «Անկրկնելի կինոճանապարհ» (2011) գրքերի: ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2015):

ՄԱԹՈՒԽԶԵՒԻ (Arbutus), **մորու ծառ**, հավամրգազգիների ընտանիքի մշտադալար ծառերի և թփերի ցեղ: Հայտնի է մոտ 20 տեսակ՝ Միջերկրածովայրում և Հս. Ամերիկայում, ինչպես նաև Ղրիմում և ՀՀ-ում: Մեղրատու է և գեղազարդիչ: Պտուղները նման են մորենու պտուղներին: Ուտելի են:

ՄԱԹՈՒՍԱՂԱ (ծ. թ. անհտ–մոտ 652), փիլ., հոգևոր գործիչ: Մ. կազմակերպել է *Սահակ Ա. Պարթևի* և *Մեսրոպ Մաշտոցի* գործերի մեկնությունները: 633-ի Կարինի ժողովում դավանաբան. վեճի ժամանակ ընթերցվել է Մ-ի թուղթը, որտեղ հեղինակը հիմնավորապես մերժել է քաղկեդոնականությունը: *Սրբեփանոս Օրբելյանն* իր «Պատմութիւն նահանգին Սիսական» երկում նրան անվանել է ժամանակի մեծ քերթող, փիլ., ճարտասան և հմուտ հոգևոր գործիչ:

ՄԱԺԱՆԴԻ (Magendie) Ֆրանսուա (1783–1855), ֆրանսիացի ֆիզիոլոգ: Ազգ. բժշկ. ակադ-ի (1819), Փարիզի ԳԱ (1821, փոխնախագահ՝ 1836-ից) անդամ: Աշխ-ները վերաբերում են նյարդ. համակարգի ֆիզիոլոգիային: Հաստատել է (համահեղինակների հետ) ողնուղեղի նյարդարմատներում շարժիչ և զգացող նյարդաթելերի տեղաբաշխման հիմն. օրինաչափությունները (Բել–Մաժանդիի օրենք):

ՄԱԺՈՐ (ֆրանս.՝ majeur, լատ.՝ major – մեծ, նաև dur, < լատ. durus – պինդ), լադ, տոնայնությունը՝ հիմքում մեծ (մաժոր) եռահնչյուն: Հակառակ *մինորի*՝ ունի լադ. լուսավոր երանգ:



ՄԱԼ (Malle) Լուի (1932–1995), ֆրանսիացի կինոռեժ.: 1953-ից՝ կինովավերագրող: Նկարահանել է նաև «Կառափնարան տանող վերելակը» (1957), «Սիրեկաններ» (1958), «Անձնական կյանք» (1962), «Լակոմբ Լյուսիեն» (1974), «Ցտեսություն, երեխաներ» (1987), «Վանյան՝ 42-րդ փողոցից» (1994, ըստ Ա. Պ. Չեխովի «Քեռի Վանյա» պիեսի) գեղ., «Ջազին մետրոյում» (1960), «Վիվատ Մարիա» (1965) կատակերգ. և այլ ֆիլմեր:

ՄԱԼ (արաբ.՝ ունեցվածք, եկամուտ), հարկատեսակ Հայաստանում XII–XIX դդ-ի սկզբին: Ձաքարյանների իշխանապետությունում Մ. հողահարկն էր: Իրան. տիրապետության ժամանակաշրջանում (XVI դ–XIX դ-ի սկիզբ) Հայաստանի մի մասում Մ. (կամ մալիայե) հիմն. հարկն էր, գանձվել է ողջ ունեցվածքից:

ՄԱԼԱԲՈ (Malabo, 1843–1973-ին՝ Սանտա Իսաբել, Santa Isabel), Հասարական. Գվինեայի մայրաքաղաքը, Հս. Բիոկո պրովինցիայի վարչ. կենտրոնը՝ Բիոկո կղզում: Բն.՝ 180 հզ. (2010): Մոտակայքում արդյունահանվում է նավթ: Հիմնադրել են անգլիացիները 1827-ին՝ որպես Պորտ Կլարենս բնակավայր: 1843–1968-ին՝ Իսպ. Գվինեայի վարչ. կենտրոնը:

ՄԱԼԱԳԱ, ք-նվինգստ Իսպանիայի հվում՝ Միջերկր. ծովի ափին, Անդալուսիա ԻՄ-ի և համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 574 հզ. (2010): Կլիմ. առողջավայր է: Գինեգործ. կենտրոն է: Գործում է Պ. *Պիկասոյի* թանգարանը: Հիմնադրել են փյունիկեցիները մ. թ. ա. մոտ 1000-ին: Կան արաբ. ճարտ-յան հուշարձաններ:

ՄԱԼԱԹԻԱ, **Մելիտինե**, ք. Խարբերդից հվ-արմ.՝ Եփրատի հետ Մելաս վտակի գետահովտման վայրից մոտ 15 *կմ* հվ՝ 3 կողմից լեռներով շրջափակ հարթավայրում: Հիշատակվում է խեթ., ասոր., ուրարտ. արձանագրություններում, Ստրաբոնի, Տակիտոսի և այլոց երկերում: Հուստինիանոս կայսեր (527–565) վարչ. վերափոխումներից հետո դարձել է բյուզ. Երրորդ Հայք պրովինցիայի կենտրոնը: *Մանազկերտի ճակատամարտից* (1071) հետո զավթել են սելջուկ-թուրքերը: Մինչև XII–XIII դդ. Մ-ում գերակշռել են հայերը, այնուհետև՝ հույները, հետագայում հաստատվել են նաև թուրքերը: 1841-ին Մ-ում տեղակայվել են թուրք. զորամասեր, և բնակիչները ք-ից մոտ 8 *կմ* հվ-արմ. հիմնադրել են նոր Մ., որը եղել է գվո-ի կենտրոն: 1895-ի արդուլհամիդյան կոտորածների ժամանակ զոհվել է մոտ 7500 հայ: 1915-ին Մ-ի 40 հզ. բնակչից հայեր էին 20 հզ-ը: Ունեցել են 3 եկեղեցի և նույնքան վարժարան: Ք-ից դուրս, այգիների մեջ էր Մ-ի եպիսկոպոսանիստ Սբ Լուսավորիչ վանքը: Մ-ի հայերը զանգվածաբար կոտորվել են 1915-ին: Փրկվածների մի մասն ապրել է «ծպտված», մյուսներն ապաստանել են տարբեր երկրներում: Վերապրած մալաթիացիների ժառանգ է Հրանտ *Դինքը*: Մ-ում կան (1999) հայ համայնք (շուրջ 30 ընտանիք) և կանգուն եկեղեցիներ: Հին Մ. (Էսկի Մ.) սակավաբնակ է: Հայրենադարձ մալաթիահայերը Երևանի մերձակայքում հիմնել են (1927) Նոր Մ. ավանը (այժմ՝ Երևանի թաղամաս):

ՄԱԼԱԹԻԱՅԻ ԲԱՐԲԱՌ, հայ-ի «կը» ճյուղի բարբառ: Խոսվել է Մալաթիա ք-ում և շրջակա գյուղերում: Ունի երկաստիճան խլազուրկ (ը–փ) բաղաձայն. համակարգ:

ՄԱԼԱԹԻԱՅԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, միջնադար. հայկ. հոգևոր և մշակույթի կենտրոն: Հայտնի 1-ին ձեռագիրը 1057-ին Թովմա գրչի ընդօրինակած հռուստ նկարազարդումներով ձեռագիրն է (Մնտդ., ձեռ. № 3784), որն այլ ձեռագրերի հետ ձևավորել է մանրանկարչ. ինքնատիպ ուղղություն: Պահպանվել են 1092, 1125, 1137-ին հուն–ից հայ. թարգմանված մի շարք վարքեր: Մ. գ. կ-ում գործել են Վասիլ Մելիտենեցի դպրապետը, Սիմոն արք–ը, Արիստակես րաբունապետը, Անանիա դպիրը, Գրիգոր կազմարարը, Դավիթ արեղան, Սահակ Կրոնավորը: Մտնդ-ում են նաև 1577, 1590, 1650-ին ընդօրինակված ձեռագրերը:

ՄԱԼԱԹԻԱՅԻ ԴԱՀՔՍ, միջլեռն. հարթավայր Փոքրասիական բարձրավանդակի արլ-ում՝ Նուրիակ, Ենգիզեկ, Մալաթիա լ-ների միջև՝ Եփրատ գետի աջ ափին: Երկ.՝ մոտ 68 *կմ*, լայն.՝ մոտ 34 *կմ*, բարձր.՝ 600–1000 *մ*: Ծածկված է ջրաբերուկներով: Կան երկաթի, պղինձի, քարածխի, շինանյութերի, կերակրի աղի հանքավայրեր: Գլխ. գետը Թոխման (Մելաս) է: Տարածված են շագանակագույն և լ-մարգագետնային հողերը՝ իրենց բնորոշ բուսածածկույթով: Է-շղթաների ստորոտներում տեղ-տեղ կան անտառ. պուրակներ: Ոռոգվող հողերում մշակում են հացահատիկ, բանջարեղեն, բամբակ, ծխախոտ, զբաղվում խաղողագործությամբ և պտղաբուծությամբ:

ՄԱԼԱԹԻԱՅԻ ԿՐԹԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, **մալաթիացիների հայրենակցական միություն**, հիմնադրվել է 1904-ին Նյու Յորքում: Նպատակը ծննդավայրի հայկ. դպրոցներին, իսկ 1915-ից հետո՝ Մեծ եղեռնից փրկված հայրենակիցներին օգնելն էր: 1927-ին նախաձեռնել է Երևանում Նոր Մալաթիա ավանի կառուցումը, որտեղ հիմնադրել է նաև տրիկոտաժի արհեստանոց (հետագայում՝ տրիկոտաժի ֆաբրիկա): Միջոցներ է հատկացրել 1926-ի Լենինականի երկրաշարժից տուժածներին, 1941–45-ին՝ «Սասունցի Դավիթ» տանկ. շարասյանը, 1946-ից սկսված ներգաղթին, Երևանի «Մալաթիա» հիվանդանոցին, նաև դպրոցների ևն: Մասնաճյուղեր ունի ԱՄՆ-ում, Լատ. Ամերիկայի երկրներում, Ֆրանսիայում, Լիբանանում, Երուսաղեմում: 1935-ից հրատարակում է *«Նոր Մալաթիա»* պաշտոնաթերթը:

ՄԱԼԱԹՅԱՆ Գալուստ (1860–1940), մանկավարժ: 1879-ից՝ Կ. Պոլսի հայկ. դպրոցների տեսուչ և ուսուցիչ: 1909-ին Հովհաննես *Հինդլյանի* հետ Կ. Պոլսում հիմնադրել է *Նոր դպրոց* կրթ. հաստատությունը: Հեղինակ է «Պատկերազարդ առողջաբանութիւն» (1893), «Նոր դպրոցի պատմութիւնը» (1920) գրքերի, թարգմյունների ևն:

ՄԱԼԱԹՅԱՆ Նշան Ավետիսի (1896–1977), անասնաբույծ: Գղտ. գիտ. դ-ր (1951), պրոֆ. (1952): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1965): Աշխ-ները վերաբերում են գղտ. կենդանիների կերակրման, կերերի քիմ. բաղադրության և սննդաարարության հետազոտման, լեռն. արոտավայրերի օգտագործման խնդիրներին:

ՄԱԼԱԽՈՎ Վլադիմիր Անատոլևիչ (ծ. 1968), բալետի ռուս արտիստ: 1986–92-ին՝ Մոսկվայի պետ. թատրոնի մենապարող (Այլերտ՝ Ա. Ադանի «Ժիզել», Բազիլ՝ Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ», ևն), 2002-ից՝ Բեռլինի պետ. օպերայի առաջատար մենապարող և գեղ. ղեկ., 2004-ից՝ պետ. բալետի տնօրեն (բեմադրել է Ս. Ս. Պրոկոֆևի «Մոխրոտը», 2002, և այլ բալետներ):

ՄԱԼԱԿԿԱ (Malacca), 1. թ–կղզի Ասիայի հվ–արլ–ում, Հնդկաչինի թ–կղզու հվ. մասը (Թաիլանդ և Մալայզիա): Երկ.՝ մոտ 1300

կմ, տարածքը՝ մոտ 190 հզ. *կմ²*: Բարձր.՝ մինչև 2187 *մ*: Կան անագի, վոլֆրամի, ոսկու, պղնձի, երկաթի, մոլիբդենի, բոքսիտի, քարածխի հանքավայրեր: Մեծ մասը ծածկված է արևադարձ. խոնավ մշտականաչ անտառներով, ափամերձ վայրերը՝ մանգրային անտառներով: 2. **Մելակա**, ք-նվինգստ Մալայզիայում՝ համանուն թ-կղզում, Մ. նահգ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 201,4 հզ. (2010): Նավթի և բնական կաուչուկի վերամշակման կենտրոն է: Հիմնադրվել է 1402-ին: Մ-ում հայերը հաստատվել են XVII դ-ի 2-րդ կեսին: Տեղի հայ գաղութի մասին առաջինը հիշատակել է ***Կոստանդին I Զուղայեցին***: Մ-ում անգլ. տիրապետության հաստատումից (1795) հետո հայերն աստիճանաբար գաղթել են Սինգապուր: Մ-ի գաղութը վերջին անգամ հիշատակվում է 1850-ին՝ Մայր աթոռ Սբ Էջմիածնի կոնդակներից մեկում:

ՄԱԼԱՅԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ***մալայացիների*** և ժամանակակից Ինդոնեզիայում, Մալայզիայում, Հվ. Թաիլանդում ապրող նրանց ազգակից ժողովուրդների գրկ-ը: Հնագույն գրավոր հուշարձաններն ավանդվել են VII դ-ից: Մ. գ-յան առավել հայտնի գործեր են «Մալայական տոհմագրություններ»-ի և միջնադար. «Հանգա Թուահի պատմությունները» էպոսի վերջն. խմբագրումները, նաև Համզահ Ֆանսուրիի և Շամսուդդին Պասեյսկու ստեղծագործությունները:

ՄԱԼԱՅԱՆ Ալեքսանդր Սերգեյի (ծ. 1948), ակնաբան: Բժշկ. գիտ. դ-ր (2001), պրոֆ. (2003): Սերգեյ ***Մալայանի*** որդին: Ա. Մալայանի անվ. Ակնաբանության հանրապետ. կենտրոնի տնօրեն (1999-ից): Աշխ-ները վերաբերում են աչքի վնասվածքների ախտորոշման և բուժման հարցերին:

Էկոլոգիայի միջազգ. ակադ-ի (2003), ՌԲՏԳԱ (2006) անդամ, ՀՀ ակնաբանների միության նախագահ (2012-ից): ՀՀ «Մխիթար Հերացի» (2007), Ֆրիտյոֆ Նանսեն հիմնադրամի (2011) մեդալներ:

ՄԱԼԱՅԱՆ Պետրոս Հովհաննեսի (1927–1997), նկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (1983): Հեղինակ է ջրաներկ և գծանկար («Հայաստան», 1975, «Ժամանակակից աշխատանքային թեմա», 1978, ևն), կոմպոզիցիոն-դիմանկարչ. («Արփա-Սևանի շինարարները», 1966, «Երևանի մետրոպոլիտենի շինարարները», 1986, ևն) գործերի շարքերի:

ՄԱԼԱՅԱՆ Սերգեյ Վարդանի (1923–1978), ակնաբան: Բժշկ. գիտ. թեկնածու (1958), դոցենտ (1964): Ալեքսանդր ***Մալայանի*** հայրը: Աշխ-ները վերաբերում են աչքի հիվանդությունների կլինիկային: Առաջինն է կազմել տեսողության սրության որոշման աղյուսակների հայ. հավաքածու: ՀՀ ԱՆ գլխ. ակնաբան (1968–78): Մ-ի անունով է կոչվել (1998-ից) Երևանում նրա նախաձեռնությամբ հիմնադրված (1979) Ակնաբան. հանրապետ. կենտրոնը:

ՄԱԼԱՅԱՆ ԿՂԶԵԽՈՒՄԲ, երկրագնդի ամենամեծ կղզեխումբը Եվրասիա և Ավստրալիա մայրցամաքների միջև: Ընդգրկում է ավելի քան 10 հզ. կղզի՝ մոտ 2 մլն *կմ²* ընդհ. տարածքով: Կազմված է Մեծ ու Փոքր Զոնդյան, Ֆիլիպինյան, Մոլուքյան և բազմաթիվ փոքր կղզիներից: Ռելիեֆում տիրապետում են միջին բարձր-յան և ցածր լեռները: Ամենաբարձր կետը Կինաբալու գագաթն է (4101 *մ*): Կան շուրջ 100 գործող հրաբուխներ: Հարուստ է անագի, նավթի, երկաթի, նիկելի, վոլֆրամի, մանգանի, բոքսիտի հանքերով: Դետերը կարճ են, ջրառատ: Տարածված են մերձարևադարձ., խոնավ, մշտադալար և մուսսոնային անտառներն ու սավաննաները, ծովափերի երկ-յամբ՝ մանգրովային մացառուտները:

ՄԱԼԱՅԱ-ՊՈԼԻՆԵԶՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, **ավստրոնեզյան լեզուներ**, ցեղակից լեզուների ընտանիք: Ունի 4 ճյուղ՝ ինդոնեզյան (մալայերեն, ինդոնեզերեն, տագալերեն, ճավայերեն, մալգաշերեն), պոլինեզյան, միկրոնեզյան:

ՄԱԼԱՅԱՅԻՆԵՐ (ինքնանվանումը՝ օրանգ մելայու), 1. ազգագր. և պատմամշակութ. հանրույթ Ինդոնեզիայում (19 մլն), Մալայզիայում (14 մլն), Թաիլանդում (2,5 մլն), Սինգապուրում (400 հզ.), Բրունեյում (200 հզ.), ՀԱՀ-ում (կապյան Մ., 200 հզ.), Ֆիլիպիններում (180 հզ.), Շրի Լանկայում (40 հզ.) և այլուր: Ընդհ. թիվը՝ ավելի քան 40 մլն (2010): Լեզուն՝ ***մալայերենն***: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են: 2. Մալայան պատմաազգագր. մարզը կազմող Հվ-արլ. Ասիայի կղզիների և Մալակկա թ-կղզու (միասին՝ Նուսանտարա) բնակչությունը: Նախնիներն ապրել են Կալիմանտանի արմ-ում, մ. թ. ա. I հզ-ամյակում համեմունքների առևտրի շնորհիվ վերաբնակվել են Հարավչին. ծովի ավազանում: Գաղութ. շրջանում (XVII դ-ից XX դ-ի կեսեր) ստեղծել են մի շարք սուլթանություններ (Պալեմբանգ, Ջամբի, Սիակ, Լինգա, Ինդրագիրի, Կուտեյ, Կոտավարինգին ևն):

ՄԱԼԱՅԵՐԵՆ, մալայացիների լեզուն: Մալայզիայի (1969-ից), Սինգապուրի, Ինդոնեզիայի (1945-ին կոչվել է ինդոնեզերեն) պետ. լեզուն: Պատկանում է ավստրոնեզյան լեզվաընտանիքի ինդոնեզյան ճյուղին: Գիրը մինչև XIII դ. ինքնուրույն էր՝ կապված հնդ. այբուբենի հետ, XIII դ-ից հիմքում՝ արաբ., XIX դ-ի 1-ին կեսից լատ. այբուբենն է: Այժմ Մ. է կոչվում Մալլակա թ-կղզու լեզուն, որը նրա Հնդկաչինի, Նոր Գվինեայի և մերձափնյակի հաղորդակցության լեզուն է:

ՄԱԼԱԶԻԱ (Malaysia), պետություն Հվ-արլ. Ասիայում: Սահմանակից է Թաիլանդին, Ինդոնեզիային, Բրունեյին և Սինգապուրին: Տարածքը՝ 329,8 հզ. *կմ²*, բն.՝ 25,7 մլն (2009): Մայրաքաղաքը՝ ***Կուալա Լումպուր***: Պետ. լեզուն՝ ***մալայերենն***: Կառավարման ձևը՝ սահմանադրամիապետ.: Պետության գլուխը սուլթանն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը: Հավատացյալների մեծ մասը սուննի մահմեդական է, կան նաև բուդդայականներ, հնդուականներ և քրիստոնյաներ: Բաժանված է 13 նահգ-ի և 3 դաշն. տարածքի (Կուալա Լումպուր, Լաբուան և Պուտրաջայա): Անդամակցում է ՄԱԿ-ին, ԱՍԵԱՆ-ին, Ազգերի բրիտ. համագործակցությանը, ԱՀԿ-ին ևն: Արագ զարգացող նոր արդ. երկրներից է: Մեքենաշինության գլխ. ոլորտն էլեկտրոն. և էլեկտրատեխ. արտադր-յունն է: Կիսահաղորդչային, ինտեգրալ. միկրոսխեմաների և կենցաղ. օդորակիչների, աուդիո- և հեռուստասարքավորումների, լուսանկարչ. և տեսախցիկների, շարժական հեռախոսների, համակարգիչների և դրանց օժանդակ սարքերի արտադր-յան համաշխ. առաջատարներից է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 14,8 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է պարեն. ապրանքներ, գինի, մեքենաներ ու սարքավորումներ ևն, ներմուծում մեքենաներ ու սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ, դեղեր, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ մալայզ. ռինգգիտ:

Մ. թ. I հզ-ամյակի սկզբին Կենտր. Սումատրայից Մ-ի տարածք են ներթափանցել այժմյան մալայացիների նախնիները: Մ-ի տարածքում առաջին պետություններն առաջացել են Մալակկա թ-կղզու հս-ում, որոնք III–VI դդ-ում կախման մեջ են եղել Հնդկաչինի Ֆունան պետությունից, VIII–XIII դդ-ում՝ Սումատրայի Շրիվիջայա կայսրությունից, XIV դ-ում՝ ինդոնեզ. Մաջապահիտ կայսրությունից: XV դ-ում և XVI դ-ի սկզբին առաջացել են Մալակկայի, Բրունեյի (Կալիմանտան կղզու հս-ում) սուլթանությունները: XV դ-ում տարածվել է մահմեդականությունը: 1511-ին Մալակկայի սուլթանությունը զավթել են պորտուգալացիները: XVI դ-ում Մալակկա թ-կղզու հվ-ում առաջացել է Ջոհորի սուլթանությունը, որը 1641-ին հոլանդացիների հետ զավթել է ողջ Մալակկան: XVIII դ-ի վերջից գաղութ. սկսվել է Մեծ Բրիտանիայի ներխուժումը, որը XIX դ-ում և XX դ-ի սկզբին իրեն է ենթարկել Մալայայի տարածքի սուլթանությունները և, միավորելով, ստեղծել է Բրիտ. Մալայա գաղութը, ապա XIX դ-ի վերջին իր պրոտեկտորատն է հաստատել Սարավակի և Սաբահի (Կալիմանտան կղզում) վրա: 1941–45-ին Մ. բռնազավթել է Ճապոնիան: 1946-ի և 1948-ի սահմանադր. բարեփոխումներով Սինգապուրն անջատվել է Մալայայից: 1949-ին ստեղծվել է Մալայայի ժողովրդների ազատագր. բանակը: Մեծ Բրիտանիան 1957-ին ընդունել է Մալայայի Դաշնության անկախությունը: 1963-ին Մեծ Բրիտանիան, Մալայայի Դաշնությունը, Սինգապուրը, Սարավակը և Սաբահը ստորագրել են համաձայնագիր՝ Ազգերի բրիտ. համագործակցության շրջանակներում Մ-ի դաշնություն ստեղծելու վերաբերյալ, որը հռչակվել է 1963-ին: 1965-ին Սինգապուրը դուրս է եկել դաշնությունից: 1981–2003-ին երկրում տեղի են ունեցել տնտ. բարեփոխումներ, որոնց շնորհիվ Մ. դարձել է Հվ-արլ. Ասիայի բարձրտեխնոլոգ. արտադր-յան կենտրոններից:

Մ-ի Փինանգ կղզում և Մալակկա ք-ում հայեր հաստատվել են XVII դ-ի վերջ–XVIII դ-ի սկզբին, որոնք հիմնականում Հնդկաստանում, Չինաստանում, Բիրմայում և Ինդոնեզիայում գործող հայկ. խոշոր առևտր. ընկ-ների ներկայացուցիչներ էին, նաև Հնդկաստանից Հվ-արլ. Ասիա անցնող հայ վաճառականներ: Փինանգում ստեղծվել են հայկ. առևտրի տներ և կազմ-յուններ, որոնք մրցակցել են անգլ. առևտր. ընկ-ների հետ: 1822-ին կառուցվել է Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (օծվել է 1824-ին, այժմ՝ ավերված): Եկեղեցու շրջակայքում հայերը կառուցել են շքեղ տներ, փողոցը կոչվել է Հայկ. (անունը պահպանվում է ցայսօր): 1950–1970-ական թթ-ին Փինանգում գործել են Հնդկաստանի «Արևելյան ապահովչելոց» առևտրաարդ. և «Աբգարյան» (կառավարիչ՝ Ծատուր Հարությունյան–Աստոնյան) ընկ-ների մասնաճյուղերը: 1895-ին փինանգահայերը հիմնել են ՀՕՖ՝ իրենց հայրենակիցներին Թուրքիայում օգնելու համար: 1917-ին հայերը Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ Գուշակյանին դիմել են՝ տնօրինելու հայ աղետյալների համար Փինանգում հավաքված գումարը:

1930-ական թթ–ից հայերը տեղափոխվել են հիմնականում Սինգապուր:

ՄԱԼԱՎԻ (Malawi), **Մալավիի Հանրապետություն**, պետություն Արլ. Աֆրիկայում: Սահմանակից է Տանզանիային, Մոզամբիկին և Զամբիային: Տարածքը՝ 118,5 հզ. *կմ*^{2}, բն.՝ 15 մլն (2009): Մայրաքաղաքը՝ ***Լիլոնգվե***: Պետ. լեզուն՝ անգլ.: Կառավարման ձևը՝ նախագահահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ ԱԺ: Հավատացյալների մեծ մասը քրիստոնյա է (կաթոլիկ և բողոք.), կան նաև մահմեդականներ և ավանդ. հավատալիքների հետևորդներ: Բաժանված է 3 վարչ. մարզերի: Անդամակցում է ՄԱԿ-ին, Աֆրիկ. միությանը, Ազգերի համագործակցությանը, ԱՀԿ-ին ևն: Աֆրիկայի աղքատ երկրներից է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով շուրջ 900 ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է ծխախոտ, սուրճ, թեյ, շաքար, չորացրած ձուկ, ուրան ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ, դեղեր, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ կվաչա:

Մ–ի տարածքում վաղուց ի վեր բնակվել են բանտու լեզվախմբի ցեղեր: XV դ–ի վերջին Նյասա լճի շրջանում կազմավորվել է մալավի ցեղային միությունը, որը շուտով քայքայվել է: XIX դ–ի 2–րդ կեսին Մ–ում հայտնվել են եվրոպացիները (անգլիացիներ ևն): 1891–ին Մեծ Բրիտանիան Մ–ի տարածքում ստեղծել է Նյասալենդ պրոտեկտորատը: Ազատագր. շարժումն ուժեղացել է ԵՀՊ–ի ժամանակ և նրանից հետո: 1944–ին ստեղծվել է Աֆրիկ. ազգ. կոնգրեսը, որը պայքարել է բնիկների իրավունքների ընդլայնման, իսկ 1953–ին Մեծ Բրիտանիայի նախաձեռնությամբ ստեղծված Նյասալենդի և Հվ. Ռոդեզիայի (1980–ից՝ Զիմբաբվե) դաշնության ստեղծումից հետո այն վերացնելու համար: 1961–ին ընդունվել է բնիկներին ընտրական իրավունքներ տվող սահմանադրություն: 1963–ին Նյասալենդն ստացել է ներքին ինքնավարություն, 1963–ին դուրս է եկել դաշնությունից, 1964–ին Մ. անվամբ հռչակվել է անկախ պետություն, 1966–ին՝ Մ–ի Հանրապետություն: 1993–ին մտցվել է բազմակուս. համակարգ: 1994–ին ընդունվել է նոր սահմանադրություն:

ՄԱԼԱՎԻ, բանտու խմբի ժողդ, ***Մալավիի*** հիմն. բնակչությունը: Տարբերում են բուն Մ. (նյանջա, չեվա, 9 մլն), տումբուկա (2 մլն), տոնգա (250 հզ.), սենա (350 հզ.) և այլ խմբեր: Ապրում են նաև Զամբիայում (880 հզ. նյանջա, 550 հզ. տումբուկա), Մոզամբիկում (1,2 մլն սենա, 680 հզ. նյանջա), Զիմբաբվեում (650 հզ. նյանջա), ՀԱՀ–ում (200 հզ. նյանջա) ևն: Մ–ի մեջ մտնում են նաև Զամբիայում, Զիմբաբվեում և Մոզամբիկում ապրող սենգա կամ նսենգա (820 հզ.), նյունգվե (550 հզ.) և կունդա (200 հզ.) ժողդ–ները: Ընդհ. թիվը՝ շուրջ 16,4 մլն (2009): Խոսում են բանտու խմբի Հս. գոտու լեզուներով: Հավատացյալների մեծ մասը քրիստոնյա է, կան նաև ավանդ. հավատալիքների հետևորդներ:

ՄԱԼԱՐԻԱ (իտալ.՝ malaria, < mala aria – վատ օդ), մարդու վարակիչ պրոտոզոային հիվանդություն: Հարուցիչները պլազմոդիումներն են, փոխանցողները՝ մալարիային մոծակները: Բնորոշ են տենդի նոպաները, սակավարյունությունը, պարենքիմային օրգանների (փայծաղ, լյարդ) և ոսկրածուծի ախտարումը: 1962–ից ՀՀ–ում չի արձանագրվել Մ–ի տեղական ծագման ոչ մի դեպք, դրա վերացման գործում մեծ ներդրում ունեն Ք. Փիրումովը, Շ. Մաթևոսյանը, Մ. Սարգսյանը, Ա. Ծատուրյանը, Ա. Չուբկովան և ուր.:

ՄԱԼԱՐԻԱՅԻՆ ՄՈԾԱԿՆԵՐ (Anopheles), **անոֆելեսներ**, մոծակների սեռ, մարդու ***մալարիայի*** հարուցիչի փոխանցողներ: Հայտնի է մոտ 300 տեսակ: Ձվերը, թրթուրները և հարսնյակները զարգանում են ջրում: Էգերն արյունածուծ են: Ի տարբերություն ոչ Մ. մ–ի՝ նստած դիրքում փորիկը բարձրացած է:

ՄԱԼԱՐՄԵ (Mallarmé) Ստեֆան (1842–1898), ֆրանսիացի բանաստեղծ: Սիմվոլիզմի ներկայացուցիչ: Հեղինակ է «Մի այծամարդու հետմիջօրեն» (1865, հրտ.՝ 1876), «Հրեշավորություն» (1867–69), «Հաջողությունը չի բացասում պատահականությունը» (1897) պոեմների, «Բանաստեղծությունների և արձակ գործերի ալբոմ» (1887), «Բանաստեղծություններ ըստ առիթի» (1880–98) ժող–ների, նաև առասպելաբանությանը և բանասիրությանը վերաբերող աշխ–ների: Հայ իրականության մեջ Մ–ի ստեղծագործությանն անդրադարձել են Մ. Մեծարենցը, Ինտրան և ուր.: Հայ. հրատարակվել են «Ծաղիկներ» (1898) ժող–ը, «Լազուր», «Հայտնություն», «Ծովային սյուք» բանաստեղծությունները:

ՄԱԼԱՔԻՏ, կարբոնատների դասի միներալ՝ $Cu_2[(OH)_2CO_3]$: Վառ կանաչ է, փայլը՝ ապակու, ալմաստի, մետաքսի: Կարծր.՝ 2,5–4, խտ.՝ 4 *գ/սմ*^{3}: Հանդիպում է պղնձի հանքավայրերի օքսիդացման գոտում, ՀՀ–ում՝ Ալավերդու, Շամլուղի, Կապանի և այլ պղնձի հանքավայրերում: Խիտ Մ. օգտագործվում է որպես դեկորատիվ քար և պղնձի հանքանյութ (պարունակում է մոտ 57 % պղինձ), իսկ հողախառն Մ.՝ որպես ներկանյութ՝ «մալաքիտային կանաչ»:

ՄԱԼԱՔԼՈՒ, վաղբրոնզիդար. և ուրարտ. մշակույթների հուշարձան Մասիս լ–ան հս–արմ. ստորոտին՝ Իգդիր–Մարագա ճանապարհի մոտ՝ Մալաքլու գ–ից ոչ հեռու: Հայտնաբերվել են մ. թ. ա. III հզ–ամյակի աշխ. գործիքներ, զարդարուն խեցեղեն, կավե զոհասեղաններ, ինչպես նաև մ. թ. ա. VIII–VII դդ–ի բրոնզե ու երկաթե իրեր, քարե ու կավե կնիքներով ամյունասափորներ: Գտածոները պահվում են Վրաստանի պատմության պետ. թանգարանում (Թբիլիսի):

ՄԱԼԵԲՐԱՆՇ (Malebranche) Նիկոլա (1638–1715), ֆրանսիացի կրոն. փիլ., օկկազիոնալիզմի հայտնի ներկայացուցիչներից: Ի հակադրություն Ռ. ***Սպինոզայի*** պանթեիզմի՝ Մ. պնդում էր, որ աշխարհը գոյություն ունի Աստծու մեջ: Հեղինակ է «Ճշմարտության որոնումներ» (1674–75) աշխ–յան:

ՄԱԼԳԱՇԵՐԵՆ, մալգաշների լեզուն: Մադագասկարի Հանրապետության պետ. լեզուն (ֆրանս–ի հետ): Պատկանում է ավստրոնեզյան լեզվաընտանիքի ինդոնեզյան ճյուղին: Գրի հիմքում՝ արաբ., 1823–ից լատ. այբուբենն է:

ՄԱԼԳԱՇՆԵՐ, 18 ժողդ–ներից (մերինա, իմերինա, բեզանուզանու, բեցիլեու, բեցիմիսարակա, անտայսակա, տանալա ևն) բաղկացած խումբ, Մադագասկարի հիմն. բնակչությունը: Ընդհ. թիվը՝ 19 մլն (2009): Ապրում են նաև Ֆրանսիայում (ավելի քան 60 հզ.), Հնդ. օվկ–ի կղզիներում (ավելի քան 10 հզ.): Լեզուն՝ մալգաշ.: Հավատացյալները քրիստոնյա են (բողոք. և կաթոլիկ), պահպանել են նաև հին հավատալիքների վերապրուկներ:

ՄԱԼԴԻՎԵՐԵՆ, **դիվեհի**, Մալդիվների պետ. լեզուն: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի հնդ. ճյուղին: Ունի սեփ. գիրը:

ՄԱԼԴԻՎՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ, կորալ. ծագման կղզեխումբ Հնդ. օվկ–ում՝ Հինդուստան թ–կղզու հվ–արմ–ում: Կազմված են ավելի քան 2 հզ. կղզիներից, մեծ մասը բնակեցված չէ: Կղզիները շրջապատված են արգելախութերով: Կլիման հասարակածային է, մուսսոնային: Կան կոկոսյան արմավենու, բանանի պուրակներ, հացի ծառեր: Մ. կ–ում է ***Մալդիվներ*** պետությունը:

ՄԱԼԴԻՎՆԵՐ, **Մալդիվյան Հանրապետություն** (Դիվեխի Ռաջյեգե Ջումհուրիա), պետություն Հվ. Ասիայում՝ Մալդիվյան կղզեխմբում: Տարածքը՝ 298 *կմ*^{2}, բն.՝ 338,8 հզ. (2014): Մայրաքաղաքը՝ ***Մալե***: Պետ. լեզուն՝ մալդիվ. (դիվեհի): Կառավարման ձևը՝ նախագահահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը (Ազգ. մեջլիս): Հավատացյալների մեծ մասը մահմեդական է: Բաժանված է 8 վարչ. տարածաշրջանների: Անդամակցում է ՄԱԿ–ին, Ազգերի համագործակցությանը: Ունի արագ զարգացող տնտ–յուն: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 4,2 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է ձուկ և ձկնամթերք, ներմուծում մեքենաներ ու սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ, դեղեր, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ ռուփի:

I հզ–ամյակում Մ–ում բնակվել են սինհալներ, հնդիկներ, մալայացիներ, որոնք դավանել են բուդդայականություն: XII դ–ից սկսվել է մահմեդականության ներթափանցումը: XIII դ–ի կեսերին Մ–ի տարածքում առաջացել է սուլթանություն (պահպանվել է մինչև 1968–ը): 1558–ին պորտուգալացիները զավթել են Մ., 1573–ին՝ վտարվել այնտեղից: 1887–ին Մ. դարձել է բրիտ. պրոտեկտորատ՝ ներքին ինքնավարությամբ: 1960–ի պայմանագրով Գան կղզին 30 տարով վարձակալության է տրվել Մեծ Բրիտանիային: Անկախացել է 1965–ին: 1968–ին հռչակվել է հանրապետություն: 2008–ին ընդունվել է նոր սահմանադրություն, անցկացվել են բազմակուս. նախագահ. ընտրություններ, որում հաղթել է Մ–ի ժողովրդավար. կուս–յան ներկայացուցիչ Մ. Նաշիդը, որը 2012–ի հեղաշրջման հետևանքով հրաժարական է տվել: Նախագահ է ընտրվել Աբդուլլա Յամինը (2013–ից):

ՄԱԼԵ (Male), Մալդիվների մայրաքաղաքը համանուն և հարակից կղզիներում: Բն.՝ 123 հզ. (2010): Ունի օդանավակայան: Արտահանում է չորացրած ձուկ, կոկոսյան արմավ ևն:

ՄԱԼԵԶՅԱՆ Հովսեփ Ստեփանի (1801–1881), մանկավարժ, բանաստեղծ: Հեղինակ է «Հրահանգ սիրոյ» (1870), «Առակ տասն կուսանաց» (1874) ժող–ների, «Բառտետր ռամկօրէնիէ ի հայերէն» (1874) աշխ–յան:

ՄԱԼԵԶՅԱՆ Վահան Ֆրանկյուլի (1871–1966), գրող, հաս. գործիչ, խմբ., թարգմանիչ: Գրել է նաև ֆրանս. և թուրք.: 1911–62–ին՝ ***«Միության»*** թերթի խմբ.: Հեղինակ է «Կերոններ» (1912), «Հոգիի ձայներ» (1949) և այլ բանաստեղծությունների, «Տարագրի մը յուշատետրը» (1915), «Ճամբուս վրայ» (1950), «Ճամբուս ծայրը» (հ. 1–2, 1954–55), «Հանգանակ հատընտիր քերթուածներու»

(1961) խոհերի, հուշագրությունների, հոդվածների, նամակների ժող-ների: Թարգմանել է Ա. Բարբյուսի, Վ. Հյուգոյի, Ա. Սամենի և ուր. գործերից:

ՄԱԼԵ-ԺՈՐԻՍ (Mallet-Joris, Լիլար) Ֆրանսուազա (1930–2016), ֆրանսիացի կին գրող: Բելգիայի թագավոր. ակադ-ի անդամ (1993): Հեղինակ է «Վանքի պարսպից այն կողմ» (1951), «Կարմիր սենյակ» (1955), «Երկնային արքայություն» (1958), «Թղթե տնակ» (1970), «Լաուրայի ծիծաղը» (1985), «Թագավոր Դիքին» (1979), «Ալլեգրա» (1976) և այլ վեպերի:

ՄԱԼԵԻՆԱԹԹՈՒ, HOOCHC=CHCOOH, էթիլեներկկարբոնաթթվի *ցիս*-իզոմերը, անգույն բյուրեղ. նյութ է, $t_{հալ.}$՝ 139°C: *Տրանս*-իզոմերը կոչվում է ֆումարաթթու, $t_{հալ.}$՝ 296 °C: Այս թթուների օրինակով ուսումնասիրել են օլեֆինների իզոմերիան: Գործն. նշանակություն ունի մալեինաթթվի անհիդրիդը:

ՄԱԼԵՎԻՉ Կազիմիր Սևերինովիչ (1878–1935), հրեա ռուս. գեղանկարիչ, արվ-ի տեսաբան: 1910–30-ական թթ-ի ռուս. ավանգարդիզմի առաջատարներից և սուպրեմատիզմի («Սև քառակուսի», 1914–15) հիմնադիրը: Ս. Պետերբուրգում ձևավորել է Մ. Մատյուշինի «Հաղթանակ արևի նկատմամբ» (1913) օպերան, «Միստերիա-բուֆֆ»-ի (ըստ Վ. Վ. Մայակովսկու, 1918) օպերայի 1-ին բեմադրությունը: 1920-ական թթ-ին արստրակտ տարած. կոմպոզիցիաների օգնությամբ ուսումնասիրել է պլաստիկ արվ-ների լեզուն, ստեղծել կենցաղ. իրերի նախագծեր, գծանկարներ:

ՄԱԼԵԲԲԱ. (Malerba) Լուիջի (Լուիջի Բոնաբդի, 1927–2008), իտալացի գրող: Հեղինակ է «Հունական կրակ» (1990) վեպ-առակի, «Ընդմիշտ Իթակե» (1997) պոստմոդեռնիստ. վեպ-պալիմպսեստի, «Գրանադա-ակումբ» (2002) վեպ-ուղեգրության, նաև մանկ. գրքերի, կինոսցենարների: Հայ. հրատարակվել է «Կար չկար Լունի անունով մի քաղաք կար (Ավանդություն)» (2008) գործը:

ՄԱԼԹԱ, Մալթայի Հանրապետություն (Republika ta' Malta), պետություն Հվ. Եվրոպայում՝ Մալթայան կղզեխմբում: Տարածքը՝ 316 *կմ*^{2}, բն.՝ 413,6 հզ. (2010): Մայրաքաղաքը՝ *Վալետա*: Պետ. լեզուները՝ մալթայերեն և անգլ.: Կառավարման ձևը՝ խորհրդարանահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը (Ներկայացուցիչների պալատ): Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է: Բաժանված է 68 վարչ. մունիցիպալիտետների: Անդամակցում է ՄԱԿ-ին, Ազգերի համագործակցությանը, ԵՄ-ին, ԵԱՀԿ-ին, ԵԽ-ին ևն: Զարգացած երկիր է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 23,8 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ, դեղեր ևն, ներմուծում սննդամթերք, մեքենաներ ու սարքավորումներ, նավթ ևն: Դրամ. միավորը՝ եվրո:

Մ-ում առաջին բնակավայրերն առաջացել են մ. թ. ա. IV հզ-ամյակում: Մ. թ. ա. XIII դ-ում Մ. գաղութացրել են փյունիկեցիները: VI դ-ում դարձել է Կարթագենի տիրույթը: Մ. թ. ա. 218-ին անցել է Հռոմին: 395–870-ին եղել է Բյուզանդիայի, 870–1091-ին՝ արաբների տիրապետության տակ: 1091-ին Մ. նվաճել են նորմանները և միացրել Սիցիլիային: 1530-ին Մ-ում հաստատվել է Հովհաննեսների ասպետ. ուխտը (կոչվել է նաև Մ-ի ուխտ): XVI դ-ում բազմիցս ենթարկվել է թուրքերի հարձակումներին: 1798-ին Մ. զավթել են Նապոլեոն I-ի զորքերը, 1800-ին՝ Մեծ Բրիտանիան և դարձրել իր գաղութը: Սուեզի ջրանցքի բացումից (1869) հետո Մ. դարձել է Մեծ Բրիտանիայի ռազմածով. խոշոր հենակետը Միջերկր. ծովում: 1921-ին Մ. ստացել է ինքնավարություն, 1964-ի սեպտ. 21-ին՝ անկախություն՝ Բրիտ. համագործակցության շրջանակներում: 1979-ին Մ-ում դադարել է գործել վերջին բրիտ. ռազմածով. հենակետը: 2004-ին Մ. անդամակցել է ԵՄ-ին:

ՄԱԼԹԱՅԵՐԵՆ, մալթացիների լեզուն, Մալթայի պետ. լեզուն (անգլ-ի հետ): Պատկանում է աֆրոասիական լեզուների սեմ. ընտանիքին: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՄԱԼԹՈՒՍ (Malthus) Թոմաս Ռոբերտ (1766–1834), անգլիացի տնտեսագետ: Մալթուսականության հիմնադիրը: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1826):

ՄԱԼԹՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, տեսություն, որը XVIII դ-ի վերջին ստեղծել է Թ. Ռ. *Մալթուսը*, համաձայն որի՝ բնակչության բարեկեցությունը որոշվում է ազգաբնակչության բնական օրենքով՝ ազգաբնակչության աճի տեմպերն զգալիորեն գերազանցում են գոյամիջոցների արտադր-յան աճի տեմպերը (ըստ նախնական ձևակերպման՝ երկրչփ. ու թվար. պրոգրեսիաներով):

Ներկայում, զարգացող երկրներում ազգաբնակչության արագ աճով պայմանավորված, պարբերաբար վերարծարծվում են Մ-ի ձևափոխված ձևերը:

ՄԱԼԻ, Մալիի Հանրապետություն (République du Mali), պետություն Արմ. Աֆրիկայում: Տարածքը՝ 1,24 մլն *կմ*^{2}, բն.՝ 15,3 մլն (2013): Մայրաքաղաքը՝ Բամակո: Պետ. լեզուն՝ ֆրանս.: Կառավարման ձևը՝ խառը հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ Ազ-ն: Հավատացյալների մեծ մասը մահմեդական է: Բաժանված է 8 վարչ. մարզերի և մայրաքաղաք. օկրուգի: Անդամակցում է ՄԱԿ-ին, Աֆրիկ. միությանը, ԱՀԿ-ին ևն: Աշխարհի ամենաաղքատ երկրներից է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 1,2 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է ոսկի, բամբակ, կենդանիներ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ, դեղեր, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ աֆրիկ. ֆրանկ:

Միջին դարերում Մ-ի տարածքում առաջացել են Արմ. Աֆրիկայի 1-ին պետությունները (Մալի, Գանա, Մոնոգհայի ևն): VIII դ-ում տարածվել է մահմեդականությունը: 1895–1959-ին եղել է ֆրանս. տարածք՝ Ֆրանս. Սուդան անունով: 1959-ին Սուդանի Հանրապետությունը և Սենեգալի Հանրապետությունը միավորվել են Մ-ի Դաշնության մեջ, որը 1960-ին անկախացել է ֆրանս. համագործակցության շրջանակներում: 1960-ի օգոստ-ին Սենեգալի Հանրապետությունը դուրս է եկել Դաշնությունից: 1960-ի սեպտ-ին Սուդանի Հանրապետությունը հռչակվել է անկախ Մ-ի Հանրապետություն անունով (միաժամանակ ընդունվել է սահմանադրություն) և դուրս եկել ֆրանս. համագործակցությունից: Նախագահ է դարձել Սուդանի միություն (հիմն.՝ 1946) կուս-յան գլխ. քարտուղար Մ. Քեյտան: 1968-ի նոյեմբ-ին ռազմ. հեղաշրջմամբ իշխանությունն անցել է Ազգ. ազատագրության ռազմ. կոմիտեին՝ Մ. Տրաորեի (1979–91-ին՝ նախագահ) գլխավորությամբ: 1979-ին անցում է կատարվել կառավարման քաղաքաց. ձևին: 1991-ին Տրաորեն հեռացվել է իշխանությունից: 1992-ին ավարտվել է անցումը քաղաքաց. կառավարմանը: Նախագահ է դարձել գնդ. Ա. Տ. Տուրեն (2002-ից), որին 2013-ին փոխարինել է Իբրահիմ Բուբաքար Քեյտան:

ՄԱԼԻՊԻԵՐ Ստեպան Գավրիլովիչ (1702–1764), ռուս բևեռախույզ, կապիտան-հրամ. (1762): Մասնակցել է Կամչատկայի 2-րդ արշավախմբի աշխ-ներին: 1736–37-ին ղեկավարել է Հս. սառուցյալ օվկ-ի առափնյա տարածքների (Պեչորայից Օբ գետերի) նկարագրության և քարտեզագրության աշխ-ները: Մ-ի պատվին «Մալիգին» է կոչվել սառցահատ-շոգենավ: Շահագործվել է 1912–40-ին: 1922–39-ին նրանով իրականացվել են Արկտիկայի ջրաբան. հետազոտություններ:

ՄԱԼԻԿԵՆ (Mulliken) Ռոբերտ Սանդերսոն (1896–1986), ամերիկացի ֆիզքիմիկոս: Աշխ-ները վերաբերում են քվանտ. քիմիային: Մոլ. օրբիտալների եղանակով հաշվարկել է մի շարք բարդ մոլ-ների էլեկտրոն. կառուցվածքները: Նոբելյան մրց. (1966):

ՄԱԼԻՆԻՆ Անդրեյ Յուրևիչ (1930–1979), ռուս ֆիզքիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1974): Աշխ-ները վերաբերում են կիսահաղորդչ. տեխնիկայի համար հատուկ նյութերի ստեղծմանը: Մշակել է տիեզ. ապարատների կիսահաղորդչ. նյութերի ստացման տեխնոլոգիա: Լենինյան մրց. (1974):

ՄԱԼԻՆՈՎՍԿԻ Միխայիլ Սերգեևիչ (1980–1976), մանկաբարձ-գինեկոլոգ: ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1944): Սոց. աշխ. հերոս (1971): Առաջարկել է ընկերքային արյան փոխներարկման մեթոդ: Աշխ-ները վերաբերում են հետծննդյան բարդությունների կանխարգելմանը, ծննդաբերության ցավազրկմանը, վիրաբուժ. մանկաբարձությանը:

ՄԱԼԻՆՈՎՍԿԻ Ռոդիոն Յակովլևիչ (1898–1967), խորհրդ. ռազմ. գործիչ: ԽՍՀՄ մարշալ (1944): ԽՄ հերոս (1945, 1958): ՀՄՊ-ի ժամանակ՝ մի շարք բանակների (Հվ., Հվարմ., 2-րդ և 3-րդ Ուկր. ռազմաճակատներում) հրամ.: 1945-ի հուլիսից՝ Անդրբայկալյան ռազմաճակատի զորահրամ.: 1947–56-ին՝ Հեռավոր Արևելքի զորքերի գլխ. և Հեռավորարլ. ՋՕ-ի հրամ.: 1956–57-ին՝ Ցամաք. զորքերի գլխ. հրամ., 1957–67-ին՝ ԽՍՀՄ պաշտպ-յան նախարար:

ՄԱԼԻՇԵՎ, Յուրի Վասիլևիչ (1941–1999), ԽՍՀՄ տիեզերագնաց-օդաչու (1980), գնդ. (1984): ԽՄ հերոս (1980, 1984): Թռել է «Սոյուզ S-2» տիեզերանավով և «Սոյուզ-6» ուղեծրակայանով (1980-ի հունիս), «Սոյուզ S-10, -11» տիեզերանավերով և «Սոլյուտ-7» ուղեծրակայանով (1984-ի ապրիլ):

ՄԱԼԻՇԿՈ Անդրեյ Սամուիլովիչ (1912–1970), ուկրաինացի բանաստեղծ: Հեղինակ է «Պրոմեթևս» (1946) և այլ պոեմների, «Քնարերգություն» (1946), «Դարի կեսօրը» (1960), «Հոգուս օգոստոսը» (1970) քնար. ժող-ների:

ԽՍՀՄ (1947, 1951, 1969), Ուկր. ԽՍՀ Տ. Գ. Շևչենկոյի անվ. (1964) պետ. մրց-ներ:

ՄԱԼԽԱՍՅԱՆ Աբարատ Յոլակի (ծ. 1948), քիմիկոս: Քիմ. գիտ. դ-ր (1983), պրոֆ. (1985): ՀՃԱ անդամ (1999): Աշխ-ները

վերաբերում են քլորոպրեն. կաուչուկների արտադր–յան տեխնոլոգիայի բարելավմանը, շրջակա միջավայրի պահպանության, աննդամթերքի մշակման և հացաթխման տեխնոլոգիաներին:

Էկոլոգիայի միջազգ. ակադ–ի (1996), ՀԳԳԱ (1997) անդամ:

ՄԱԼԽԱՍՅԱՆ Էդուարդ Գուրգենի (1926–2003), երկրաբան: Երկրբ–ինքբ. գիտ. դ–ր (1971), պրոֆ. (1987): Իրինա ***Մալխասյանի*** հայրը: 1980–91–ին՝ Կովկաս. հանք. հումքի ինստ–ի հայկ. բաժանմունքի տնօրենն: Աշխ–ները վերաբերում են ՀՀ երկրբ. կառուցվածքի, մագմատիզմի ու հանքայնացման, երկրբ–յան պատմության հարցերին: Երկրբ–յան պատմության միջազգ. միության անդամ (1992–ից):

ՄԱԼԽԱՍՅԱՆ Իրինա Էդուարդի (ծ. 1954), անեսթեզիոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (2004), պրոֆ. (2006): Էդուարդ ***Մալխասյանի*** դուստրը: Երևանի համալսարան. կլինիկ. № 1 հիվանդանոցի կլինիկայի ղեկ. (2011–ից): Աշխ–ները վերաբերում են թոքերի արհեստ. օդափոխության օժանդակ եղանակներին և շնչառ. դիսթրես–համախտանիշի ու տարբեր ծագման շնչառ. անբավարարության բուժմանը, սահման. վիճակների բժշկ. կառավարման սկզբունքներին: ՀՀ անեսթեզիոլոգների և ռեանիմատոլոգների (1977–2002), Ամրքիչ բուժման և ցավի բուժման հայկ. (2004–ից) ընկ–ների փոխնախագահ:

ՄԱԼԽԱՍՅԱՆ Լևոն Պարույրի (ծ. 1945), դաշնակահար, կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2007), ժող. արտիստ (2013): Հայաստանում առաջին ջազ–եռյակի (1963) և ջազ–քառյակի (1966) հիմնադիրը: «Ջազային համայնապատկեր» (1985) և այլ միջազգ. ջազ–փառատոնների (1998, 2000) կազմակերպիչներից: 1967–80–ին՝ «Կռունկ», «Սերպանտին», «Ծիածան» և այլ անսամբլների անդամ:

«Լավագույն դաշնակահար» մրց. (1968, Երևան, 1972, Կույբիշև), ՀՀ «Մովսես Խորենացի» (2003), ՄՆ ոսկե (2010) և այլ մեդալներ:

ՄԱԼԽԱՍՅԱՆ Կետտի (Եկատերինա) Աշոտի (1919–2001), դաշնակահար, մանկավարժ: ԵՊԿ պրոֆ. (1968): ՀՀ արվ. վաստ. գործիչ (1967): 1947–ին տեղափոխվել է Երևան, որպես մենակատար հանդես եկել Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի և Կոմիտասի անվ. քառյակի հետ: Երկացանկում՝ Ֆ. Շոպենի, Լ. վան Բեթհովենի, Ռ. Շումանի, հայ կոմպոզիտորների դաշնամուր. երկերից:

ՄԱԼԽԱՍՅԱՆ Կոնստանտին Հովհաննեսի (1916–2007), գնդ. (1958): Փորձարկել է Տու–4, Տու–91, Տու–128/80, Տու–104, Տու–124, Տու–134 1–ին ռեակտիվ մարդատար և ռազմ. ինքնաթիռները: 1943–ին մասնակցել է ԽՍՀՄ պատվիրակության փոխադրմանը ***Թեհրանի խորհրդաժողովին***: 1956–ին Տու–98 ռմբակոծիչ ինքնաթիռով, աշխարհում առաջինը, հասել է գերձայն. արագության: 1959–ին Տու–114 ինքնաթիռով Մոսկվայից անվայրէջք թռիչք է կատարել Վաշինգտոն, Նյու Յորք, Պեկին երթուղիներով:

ԽՍՀՄ Կարմիր դրոշի (2), ՀՄՊ 1–ին աստիճանի, Կարմիր աստղի (5) շքանշաններ:

ՄԱԼԽԱՍՅԱՆ Հովհաննես Մկրտչի (1866–1931), գյուղագիր, մանկավարժ, խմբ.: 1907–09–ին՝ «Մեր ձայնը» թերթի հիմնադիր–խմբ.: Հեղինակ է «Երդում» (1895) վեպի, «Աւազի վրայ» (1914) պիեսի, նաև «Պատանեկան յուշեր» (1896) բանաստեղծությունների, «Հայ գեղջուկի ալբոմը» (մաս 1, 2, 1898, 1901) ազգագր. նյութերի, «Հօրոտ–Մօրոտ» (գիրք 1–4, 1898–1927) պատմվածքների ժող–ների և այլ գործերի: Նար–Դոսի հետ կազմել և հրատարակել է «Գիր եւ կեանք» (1911) մայրենի լեզվի դասագիրքը:

ՄԱԼԽԱՍՅԱՆ Հովհաննես Սուրենի (ծ. 1952), գրաֆիկ, նկարիչ: Հեղինակ է գրաֆիկ., գեղանկարչ. («Պար», 1992, «Թափառող դերասաններ», 1996, ևն) գործերի, գրքերի նկարազարդումների (Կոբո Աբեի «Երեք վեպ», 1925, Է. Բլայտոնի «Բարի Ջամբոն», 1988, Վ. Պողոսյանի «Հեքիաթների զարդատուփը», 1992, Ս. Վարդազարյանի «Տաթևիկի տիկնիկները», 1995, ևն):

ՄԱԼԽԱՍՅԱՆ Ռազմիկ Տաճատի (ծ. 1941), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1996): ՀՃԱ թղթ. անդամ (2001): 2005–ից՝ «Նանոամորֆ տեխնոլոգիաներ» ՓԲԸ–ի գործադիր տնօրեն: Աշակել և ստեղծել է նոր անհավասարակշռված քվանտ. տեխնոլոգիա, սինթեզել է նոր դասի՝ նանոամորֆ նյութեր:

ՄԱԼԽԱՍՅԱՆ Վիգեն Արամայիսի (1921–1991), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1960), պրոֆ. (1961): Աշխ–ները վերաբերում են մարսողության օրգանների վիրաբուժության, էլեկտրանարկոզի հարցերին: Աշակել և ներդրել է ստամոքսի, կերակրափողի մասնահատման եղանակներ: Հայաստանում առաջինն է աշակել կրծքային ավշածորանի դրենավորումը՝ ախտորոշիչ և բուժիչ նպատակներով:

ՄԱԼԽԱՍՅԱՆՑ Ստեփան Սարգսի (1857–1947), բանասեր, լեզվաբան, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ–ր (1940): ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր կազմի ակադ. (1943): Հեղինակ է «Ուսումնասիրութիւն Փաւստոս Բիւզանդի պատմութեան» (1896), «Սերէոսի պատմութիւնը եւ Մ. Խորենացի» (1899), «Խորենացու առեղծվածի շուրջը» (1940) և այլ բանասիր., «Գրաբարի հոլովումը, խոնարհումը եւ նախդիրները» (1891), «Գրաբարի համաձայնութիւնը» (1892) և այլ լեզվաբ. աշխ–ների, «Մատենագիտական դիտողություններ» (հրտ.՝ 1961), «Բանասիրական հետազոտություններ» (հրտ.՝ 1982) ժող–ների: Կազմել է «Հայերէն բացատրական բառարանը» (հ. 1–4, 1944–45): Թարգմանել է Վ. Շեքսպիրի ողբերգություններից: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946):

ՄԱԼՅԱՆ Դավիթ Մելքումի (1904–1976), դերասան: ՀԽՍՀ (1942), ԽՍՀՄ (1974) ժող. արտիստ: Հենրիկ ***Մալյանի*** հորեղբայրը: 1926–32–ին՝ Թիֆլիսի, Լենինականի, Երևանի Բանվ., 1924–27–ին և 1932–ից՝ Գ. Սունդուկյանի անվ. թատրոնների դերասան (Վահագն՝ Ա. Գուլակյանի «Արշալույսին», Կակուլի՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», նաև կինոյում, Օգնև՝ Ա. Կոռնեյչուկի «Ռազմաճակատ», Կլավդիոս, Լաերտ, Յագո՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», «Օթելլո», ևն): 1926–ից նկարահանվել է կինոյում («Զանգեզուր», 1938, «Դավիթ Բեկ», 1943, երկուսն էլ՝ Հայֆիլմ, ևն): Հեղինակ է «Դեմքեր, հանդիպումներ» (1974) հուշագրության: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950, 1952):

ՄԱԼՅԱՆ Հենրիկ Սուրենի (1925–1988), կինոռեժ.: ՀԽՍՀ (1977), ԽՍՀՄ (1982) ժող. արտիստ: Նարինե ***Մալյանի*** հայրը, Դավիթ ***Մալյանի*** եղբորորդին: 1951–54–ին՝ Հայաստանի շրջ. թատրոնների, 1954–ից՝ Հայֆիլմի ռեժ. («Նվագախմբի տղաները», 1960, «Եռանկյունի», 1967, «Մենք ենք, մեր սարերը», 1969, ըստ Հ. Մաթևոսյանի, «Նահապետը», 1977, ըստ Հ. Քոչարի, «Կտոր մը երկինք», 1980, ըստ Վ. Թոթովենցի): Մ–ի նախաձեռնությամբ Հայֆիլմին կից ստեղծվել է ***Երևանի կինոդերասանի թատրոն–ստուդիան*** (1980, մինչև 1988–ը՝ գեղ. ղեկ., 1988–ից՝ Մ–ի անվ.): Հեղինակ է «Երկխոսություն երրորդի համար» (հրտ.՝ 1997) գրքի: ՀԽՍՀ Պետ. մրց. (1975):

ՄԱԼՅԱՆ Նարինե Հենրիկի (ծ. 1960), ռեժ.: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2011): Հենրիկ ***Մալյանի*** դուստրը: 2002–ից՝ Հ. Մալյանի անվ. կինոդերասանի թատրոնի գեղ. ղեկ.: Բեմադրել է Ե. Օտյանի «Ընկեր Փանջունի» (1988, Գ. Բաբայանի հետ), Ջ. Արդենի «Խաղաղ հանգրվան» (1990), Ա. Այվազյանի «Ցեղի ֆիզիոլոգիա» (2004), Վ. Սարոյանի «Պատմություններ գնացքում» (2008) և այլ գործեր: Նկարահանել է «Առանց խոսքի» (1981), «Վերջապես գալիս եմ» (2001) վավերագր. ֆիլմերը:

«Կին» միջազգ. կփ գլխ. (2004), «Արտավազդ» (2005, 2007, 2009, 2015), ԹՄՄ «Թատրոն» (2008) մրց–ներ, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2015):

ՄԱԼՅՈՐԿԱ (Mallorca), Միջերկր. ծովի Բալեարյան կղզեխմբի (Իսպանիա) ամենամեծ կղզին: Տարածքը՝ 3640,16 *կմ²*, բն.՝ 859,3 հզ. (2015): Բարձր.՝ մինչև 1445 *մ*: Վարչ. կենտրոնը՝ ***Պալմա դե Մալյորկա***: Այստեղ անցկացվում են շախմատի աշխարհի և այլ առաջնություններ:

ՄԱԼՅՈՒՍ (Malus) Էթիեն Լուի (1775–1812), ֆրանսիացի ֆիզիկոս: Ուսումնասիրել է լույսի բևեռացումը, հայտնաբերել իր անվամբ կոչված օրենքը: Աշակել է բյուրեղներում երկճառագայթաբեկման տեսությունը:

ՄԱԼՅՈՒՍԻ ՕՐԵՆՔ, գծային բևեռացված լույսի ինտենսիվությունը վերլուծիչի միջոցով անցնելուց հետո փոքրանում է $\cos^2\varphi$–ին համեմատականությամբ, որտեղ φ–ն լույսի բևեռացման հարթության և սարքի կազմած անկյունն է: Բացահայտել է Է. Լ. ***Մալյուսը*** 1810–ին:

ՄԱԼՅՈՒՍՈՎ Վլադիմիր Ալեքսանդրովիչ (1913–2003), ռուս քիմիկոս–տեխնոլոգ: ՌԳԱ թղթ. անդամ: Աշխ–ները վերաբերում են հիդրոդինամիկային և զանգվածափոխանցմանը հեղուկ–գազ երկֆազ հոսքերում: Աշակել է արագընթաց բազմաթորումով, բազմաստիճան սուրլիմացմամբ խառնուրդները բաժանելու եղանակներ և սարք: ԽՍՀՄ Պետ. մրց. (1953):

ՄԱԼՅՈՒՏԻՆ Սերգեյ Վասիլևիչ (1859–1937), ռուս գեղանկարիչ, գրաֆիկ, բեմանկարիչ, ճարտ.: Հեղինակ է ժանր. տեսարանների («Էտապով», 1890), դիմանկարների (Կ. Ֆ. Յուոնի, 1914, Դ. Ա. Ֆուրմանովի, 1922), մանկ. գրքերի պատկերազարդումների, մոդեռն ոճին մոտ դեկորատիվ արվ–ի գործերի և ճարտ. նախագծերի (Փոքր վերնատուն), թատրոն և տաճար–հանգստարան Տալաշկինոյում՝ Սմոլենսկի մերձակայքում (1900–ական թթ–ի սկիզբ):

ՄԱԼՆԱՉԱՓ, XVII դ–ի 1–ին կեսի մանրանկարիչ: Եղբոր՝ Աղափիրի հետ 1637–38–ին Նոր Ջուղայում պատկերազարդել է Աստվածաշունչ (Պ. Գետտիի թանգարան, Լոս Անջելես): Պատկերազարդումներն աչքի են ընկնում վառ գույներով, պարսկ. զարդամոտիվներով, նկատելի են նաև

կիլիկյան ձեռագրերի ոճային առանձնահատկությունները, Տաթևի դպրոցի Ավետարաններից փոխառված խորանները:

ՄԱԼՈ (Malot) Էկտոր (Հեկտոր, 1830–1907), ֆրանսիացի գրող: Հեղինակ է նատուրալիզմի տարրերով ռեալիստ. վեպերի, այդ թվում՝ «Սիրո զոհերը» (1859–66) եռերգության: Ճանաչվել է «Ռոմենն Կալբրի» (1869, հայ.՝ 1974), «Առանց ընտանիքի» (1878, կինոնկար՝ 1984, հայ.՝ 1958), «Ընտանիքում» (1893) մանկ. գրքերով:

ՄԱԼՊԻԳԻ (Malpighi) Մարչելլո (1628–1694), իտալացի կենսաբան և բժիշկ: Լոնդոնի թագավոր. ընկ-յան անդամ (1668), բույսերի և կենդանիների մանրադիտակային անատոմիայի հիմնադիրներից: Աշխ-ները վերաբերում են հյուսվածաբանության, համեմատ. անատոմիայի, սաղմնաբանության հարցերին: Մ-ի անունով հայտնի են ***մալպիգյան անոթները*** և ***մալպիգյան մարմնիկները***:

ՄԱԼՊԻԳՅԱՆ ԱՆՈԹՆԵՐ (Մ. *Մալպիգիի* անունով), սարդակերպների, բազմոտանիների և միջատների արտաթորության օրգաններ: Աղիները երկար խողովակավոր ելուստներ են՝ միջին և հետին աղիների սահմանի վրա: Ջր. միջատների Մ. ա. մասնակցում են օսմոկարգավորմանը:

ՄԱԼՊԻԳՅԱՆ ՄԱՐՄՆԻԿՆԵՐ (Մ. *Մալպիգիի* անունով), 1. զարկերակ. մազանոթների կծիկներ մարդու և ողնաշարավորների (բացառությամբ՝ որոշ ձկների) երիկամներում, որոնցում արյունից հեղուկը զտվում է միզային խողովակիկների մեջ: 2. Ավշանման հանգույցներ՝ փայծաղի ցանցանման (ռեթիկուլյար) հյուսվածքում, որոնցում ձևավորվում են լեյկոցիտները:

ՄԱԼՐՈ (Malraux) Անդրե (1901–1976), ֆրանսիացի գրող, քաղ. գործիչ: Հեղինակ է էկզիստենցիալիստ. «Նվաճողները» (1928), «Մարդկության գոյության պայմանները» (1933) և հակաֆաշիստ. թեմաներով «Արիամարհանքի տարիներ» (1935), «Հույս» (1937) վեպերի, նաև արվ-ի փիլ-յանն ու հոգեբ-յանը վերաբերող աշխ-ների:

ՄԱԼՑ (Maltz) Ալբերտ (1908–1985), ամերիկացի հրեա գրող, սցենարիստ: «Հոլիվուդյան տասնյակ»-ի հայտնի անդամ: Հեղինակ է սոցիալ. սուր թեմաներով պիեսների («Կարուսել», 1932, «Խաղաղություն երկրի վրա», 1934, ևն), վեպերի («Խաչ և նետ», 1944, «Կարճատև կյանքի երկար օրը», 1957, ևն), «Երկրագնդի ամենաերջանիկ մարդը» պատմվածքի և այլ գործերի: Հայ. հրատարակվել են «Պատմվածքներ» (1953), «Դեպք փողոցի անկյունում» (1963, պատմվածքներ) ժող-ները:

ԱՄՆ-ի Օ'Հենրիի անվ. մրց. (1938):

ՄԱԼՑԵՎ Ալեքսանդր Նիկոլաևիչ (ծ.1949), ռուս մարզիկ (տափօղակով հոկեյ): ԽՍՀՄ ս. վ. վ. (1969): Մոսկվայի «Դինամո» թիմի հարձակվող (1967–81): Օլիմպ. խաղերի (1972, 1976), աշխարհի և Եվրոպայի բազմակի (1969–83) չեմպիոն:

ՄԱԼՑԵՎ Անատոլի Իվանովիչ (1909–1967), ռուս մաթեմատիկոս, Նովոսիբիրսկում տրամաբանահանրահաշվ. գիտ. դպրոցի հիմնադիր: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1958): Աշխ-ները վերաբերում են հանրահաշվին (խմբերի և օղակների տեսություն, տոպոլոգ. հաշիվ), մաթ. տրամաբ-յանը (ալգորիթմների տեսություն) և նրա մեթոդների կիրառմանը հանրահաշվում:

ԽՍՀՄ Պետ. (1946), Լենինյան (1964) մրց-ներ:

ՄԱԼՈՒԼ (Սարգիսյան Գալուստ, 1823–1887), աշուղ: Նվագել է ջութակ: Գրել է գր. հայ-ով՝ աշուղ. արվ-ի գրեթե բոլոր ժանրերով: 1884-ին հրատարակել է «Սիօնի երգերը» ժող-ը:

ՄԱԼՈՒՄՅԱՆ Էլբուրս Հայրապետի (ծ. 1940), նկարիչ: Ստեղծել է դիմաքանդակներ գունավոր քարերի, մետաղների վրա («Վարդան Մամիկոնյան», 1979, խեցի, արծաթ, «Կոմիտաս», 1980–81, խեցի, արծաթ, ևն), վզնոցներ («Անահիտ», 1978, փղոսկր, արծաթ, ևն), կոմպոզիցիոն քամեոններ («Ադամ և Եվա», արծաթ, խեցի, 1989, ևն), մանրաքանդակներ («Քրիստոս», փղոսկր, արծաթ, սև փայտ, 1990, ևն), կրծքազարդեր ևն:

ՄԱԼՈՒՄՅԱՆ Խաչատուր, **Էդգար Ակունի** (1863–1915), հրապարակախոս, հաս-քաղ. գործիչ: 1910-ին Մ-ի ջանքերով ԱՄՆ-ում հիմնադրվել է ***Հայ օգնության միությունը***: Քարոզչ. գործունեություն է ծավալել Եվրոպայում, Կ. Պոլսում, Լիբանանում, Եգիպտոսում և Հս. Ամերիկայում՝ ի նպաստ Հայ դատի: Հեղինակ է «Մտքի մշակը» (1890), «Կովկասեան վէրքեր» (1903, հոդվածների ժող.), «Խրիմեան...» (1892), «Դէպի երկիր...» (1911), «Բողոքի ձայն» (1911) գրքերի, թարգմ-յուններ է արել ռուս-ից: Մեծ եղեռնի զոհ:

ՄԱԼՈՒՄՅԱՆ Վիգեն Հայկի (ծ. 1932), աստղաֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1991), պրոֆ. (1995): Աշխ-ները վերաբերում են գազ. միգամածությունների, Գալակտիկայի միջուկի, ռադիոաղբյուրների, քվազարների, ռադիո- և նորմալ գալակտիկաների օպտիկ., ԵԿ և ռադիոճառագայթման կապի հետազոտություններին:

ՄԱԼՈՒՆՑՅԱՆ Միքայել Մովսեսի (1903–1973), դիրիժոր, մանկավարժ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1956): Աշակերտներից են Ռ. Մանգասարյանը, Դ. Խանջյանը: 1927–73-ին (ընդմիջումներով) դասավանդել է Երևանի (1962-ից պրոֆ.), 1934–45-ին՝ Մոսկվայի կոնսերվատորիաներում: 1932-ին՝ Մոսկվայի համամիութ. ռադիոյի սիմֆ. նվագախմբի դիրիժոր, 1945–67-ին (ընդմիջումով)՝ Հայաստանի սիմֆ. նվագախմբի հիմնադիր-գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր:

ՄԱԽ (Mach) Էռնստ (1838–1916), ավստրիացի ֆիզիկոս և փիլ.: Էմպիրիոկրիտիցիզմի (մախիզմ) հիմնադիրներից: Աշխ-ները վերաբերում են մեխանիկային, գազադինամիկային, ֆիզիկային, ֆիզիոլոգ. ձայնագիտ-յանը և օպտիկային: Հայտնաբերել և ուսումնասիրել է ***հարվածային ալիքները***: Համարել է, որ դաս. ֆիզիկայի ելակետ. հասկացությունները (տարածություն, ժամանակ, շարժում), ըստ իրենց ծագման, սուբյեկտիվ են, աշխարհը՝ «զգայությունների համալիր», գիտ-յան խնդիրը դրանց նկարագրությունն է («Զգայությունների վերլուծություն և ֆիզիկականի հարաբերությունը հոգեկանին», 1886): Մ-ի անունով են կոչվել ֆիզիկայի հասկացություններ և մեծություններ՝ ***Մախի կոն, Մախի թիվ*** ևն:

ՄԱԽԱՈՆ (Papillo machaon), առագաստավորների ընտանիքի թիթեռ: Թևերի բացվածքը մինչև 9 *սմ* է: Թևերը վառ դեղնագույն են՝ սև պտերով: Սնվում են աստղածաղկազգիների և նեխուրազգիների տերևներով:

ՄԱԽԱՐԱՋԵ Ավթանդիլ Իվանի (ծ. 1943), վրացի դերասան: ՎԽՍՀ ժող. արտիստ (1987): 1966-ից՝ Թբիլիսիի Շ. Ռուսթավելու անվ. թատրոնի դերասան (Իվանե Գվերդեվանիձե՝ Դ. Կլդիաշվիլու «Սամանաշվիլու խորթ մայրը», Բորիս Գոդունով՝ Ա. Կ. Տոլստոյի «Իվան Ահեղի մահը», Ջակո՝ «Փլուզում՝ ըստ Մ. Ջավախաշվիլու, ևն): Նկարահանվել է կինոյում («Ապաշխարանք», 1984, ռեժ.՝ Թ. Աբուլաձե, «Բոլորը գնացին», 2012, ռեժ.՝ Գ. Փարաջանով, ևն):

ՄԱԽԻ ԹԻՎ (M), սեղմելի գազի հոսքի չափազուրկ բնութագիր. հավասար է գազի հոսքի v արագության և հոսքի նույն կետում ձայնի տարածման a արագության հարաբերությանը՝ M = v/a: Անվանվել է Է. ***Մախի*** անունով:

ՄԱԽԻ ԿՈՆ, բնութագրական կոն, կոնական մակերևույթ գազի գերձայն. հոսքում, որը սահմանափակում է կոնի գագաթում տեղակայված կետային աղբյուրից ելնող բոլոր ձայն. խոտորումները (օր.՝ գերձայն. արագությամբ թռչող ինքնաթիռի աղմուկը Մ. կ-ից դուրս չի լսվում): Անվանվել է Է. ***Մախի*** անունով:

ՄԱԽԻԶՄ, XIX դ-ի վերջ–XX դ-ի սկզբի փիլ. ուղղություն՝ այսպես կոչված «երկրորդ պոզիտիվիզմ», որի տես. հիմն. դրույթները մշակել են Է. ***Մախը*** և Ռ. ***Ավենարիուսը*** (տես նաև ***Էմպիրիոկրիտիցիզմ***): Հայ մտածողներից Մ-ին հարել է Երվանդ ***Ֆրանգյանը***:

«ՄԱԽԼԱՍ», գր., երգիծ. շաբաթաթերթ (1913–15, Թիֆլիս): Խմբ-հրտ.՝ Սաթենիկ Լազքարյան:

ՄԱԽՄԱԼԲԱՖ Մոխսեն (ծ. 1957), իրանցի կինոռեժ.: Հաս-յան իրական կյանքը, մարդկային զգացումները բանաստեղծորեն է պատկերել «Մանրավաճառը» (1987), «Կանդահար» (2001), «Sex և փիլիսոփայություն» (2005), «Մրջյունների ճիչը» (2006), «Նախագահը» (2014) և այլ ֆիլմերում:

Ս. Փարաջանովի անվ. «Ոսկե ծիրան» մրց. (2006, Երևան):

ՄԱԽՄՈՒՐՅԱՆ Գայանե Գեորգիի (ծ. 1955), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (2009): Աշխ-ները վերաբերում են Հայոց ցեղասպանությանը, ՀՀ (1918–20) և Այսրկովկասի նկատմամբ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի՝ 1918–23-ին իրականացրած քաղ-յանը և արդի հայոց պատմության հիմնահարցերին:

ՄԱԽՄՈՒՐՅԱՆ Թամարա Դմիտրիի (1907–2002), ուռուցքաբան-գինեկոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (1977): Աշխ-ները վերաբերում են կանանց սեռ. օրգանների քաղցկեղի ախտորոշմանն ու համակցված ճառագայթաբուժմանը: 1953-ին առաջինն է որոշել լյարդի պունկտատում կատալազի ակտիվությունը, որն ունի ախտորոշիչ նշանակություն:

ՄԱԽՄՈՒՐՈՎԱ Տատյանա (Մախմուրյան Թագուհի) Լևոնի (1910–1989), կինոդերասանուհի: ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1975): 1928-ից նկարահանվել է կինոյում (Կեկել՝ «Պեպո», Մարո՝ «Տունը հրաբխի վրա», Գայանե՝ «Դավիթ Բեկ», Անահիտ՝ «Լույս և ստվեր», Նանի՝ «Գիքոր», բոլորը՝ Հայֆիլմ): 1951–86-ին աշխատել է ՀԱՊ-ում:

ՄԱԽՈԽՅԱՆ Վարդան Արիստակեսի (1869–1937), նկարիչ: Հեղինակ է ծով. տեսարանների («Հուզված ծովը վերջալույսին», «Բրետանի ափերը», «Ալիք» ևն), բնանկարների («Տրապիզոնի վանքը», «Ռուսական ստեպները» ևն): Հովհաննես

Այվազովսկուց հետո ամենախոշոր ծովանկարիչն է հայ նոր կերպարվ–ում:

Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» շքանշան (1925):

ՄԱԽՈՐԿԱ, մորմազգիների ընտանիքի ծխախոտ ցեղի միամյա բույս: Մ–ի չոր տերևները պարունակում են 1–10 % նիկոտին, 10–20 % օրգ. թթուներ, իսկ սերմերը՝ ճարպ: Տերևները համապատասխան մշակումից հետո օգտագործում են որպես ծխախոտ, քթախոտ և ծամելու խոտ: Աշակում են Լեհաստանում, Հունգարիայում, Հնդկաստանում ևն: Հայաստանում սկսել են մշակել XVII դ–ի վերջերից, մշակությունից հանվել է 1920–ից:

ՄԱԽՉԱՆՅԱՆ Հենրիկ Մկրտչի (1926–2005), մանկավարժ, բանասեր: Մանկավարժ. գիտ. դ–ր (1984), պրոֆ. (1986): ՀՀ ՄԳԱ հիմնադիր–անդամ (1998): 1979–82–ին՝ ԵՒՕԼՄԻ–ի պրոռեկտոր: Հեղինակ է «Գրական–տեսական գիտելիքների ուսուցումը միջնակարգ դպրոցում» (1963), «Հայ գրականության ուսուցման պատմություն (V–XX դդ.)» (1979), «Մանկավարժական մտորումներ» (1990) և այլ աշխ–ների, համահեղ.՝ «Գրականագիտական բառարանի» (1980):

ՄԱԾՆԱԲԵՐԴԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, ավատատիր. կազմավորում (XII դ.–XIII դ–ի վերջ) *Ուտիք* նհնգ–ի արմ. մասում: Հիմնադրել է Կյուրիկե Ա–ի որդի Դավիթը (1113–45)՝ *Կյուրիկյան թագավորության* անկումից (1113) հետո: *Զաքարյանների* գերակայությանը ենթակա Մ. ի. քաղ. կապեր է ունեցել հարևան իշխանությունների հետ: 1236–ին Մածնաբերդն առժամանակ զավթել են մոնղոլները: 1250–ականների մոնղ. արշավանքներին (Նփրկերտ, Բաղդադ) մասնակցել է Թաղիադինը, որի որդի Սարգիսը Մ. ի–յան վերջին տիրակալն էր: Մածնաբերդի Կյուրիկյաններից Աբասի քույր Մարիամը կառուցել է տվել Քորայրի եկեղեցին:

ՄԱԾՈՒՆ, հայկ. ազգ. կաթնաթթվային սննդամթերք: Ստանում են կովի, ոչխարի, այծի, գոմեշի կաթից: Բարելավում է մարսողությունը, բարձրացնում իմունիտետը: Մ–ից պատրաստում են չորթան, ժաժիկ, թան, կարագ և քամած Մ.:

ՄԱԾՈՒՑԻԿԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ, հեղուկների և գազերի մածուցիկության չափման մեթոդների համախումբ: Չափում են **մածուցիկաչափով**, որի աշխ–ը հիմնված է գազերի ու հեղուկների հոսքի, նաև մածուցիկ միջավայրում մարմինների շարժման օրենքների վրա: Առավել տարածված են մազական (*Պուազեյլի օրենքի*), ընկնող գնդի (*Ստոքսի օրենքի*), ռոտացիոն (համառանցք գլանների միջև հեղուկի հոսքի օրենքի հիման վրա) և անդրաձայն. մեթոդները:

ՄԱԾՈՒՑԻԿՈՒԹՅՈՒՆ, **ներքին շփում**, 1. հոսող մարմինների (գազեր և հեղուկներ) հոսելուն դիմադրելու հատկությունը: Պայմանավորված է հոսող հեղուկի շերտերի միմյանց նկատմամբ սահքի լարվածությամբ: Որքան մեծ է հեղուկի Մ., այն այնքան դանդաղ է հոսում: Հեղուկների Մ. անհամեմատ մեծ է գազերի Մ–ից: Բազմաթիվ հեղուկների Մ. նվազում է ջերմաստիճանի բարձրացմամբ: 2. Պինդ մարմնի Մ–յան մասին տես *Ներքին շփում* հոդվածում:

ՄԱԿԱԲՈՒԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **պարազիտոլոգիա**, կենսբ. համալիր գիտ–յուն. ուսումնասիրում է *մակաբուծականության* երևույթները, այսինքն՝ մակաբույծի և տիրոջ միջև փոխհարաբերությունները, նրանց կախվածությունն արտաքին միջավայրի գործոններից, նաև մարդկանց, բույսերի ու կենդանիների օրգանիզմներում մակաբույծների առաջացրած հիվանդությունները և պայքարի միջոցները:

ՄԱԿԱԲՈՒՅԾՆԵՐ, **պարազիտներ** (հուն.՝ parasitos – ձրիակեր), օրգանիզմներ, որոնք ապրում են այլ օրգանիզմների (տերերի) հաշվին և մեծ մասամբ վնասում են նրանց: Մ. լինում են օբլիգատ (պարտադիր), ֆակուլտատիվ (ոչ պարտադիր կամ պայման.), ժամանակավոր (տիրոջ վրա հարձակվում են միայն սնվելու համար) և ստացիոնար (տիրոջ հետ կապված են կյանքի մեծ մասը): Արտաքին Մ. (էկտոպարազիտներ) ապրում են տիրոջ մարմնի վրա, ներքինները (էնդոպարազիտներ)՝ տիրոջ մարմնում:

ՄԱԿԱԵՎ, Էնվեր Ահմադի (1916–2004), թաթար լեզվաբան: Բանասիր. գիտ. դ–ր (1964), պրոֆ. (1971): Հեղինակ է ընդհ. լեզվար–յանը, հնդեվրոպաբանությանը, գերմանագիտ–յանը (գերմ–ի պատմություն, ձևաբանություն, ռունային գիր), հնդկաբանությանը (վեդայական լեզու) վերաբերող աշխ–ների: Ուսումնասիրել է նաև հայ–ի պատմահամեմատ. խնդիրները:

ՄԱԿԱԿՆԵՐ (Macaca, Macacus), ցածրակարգ, նեղթիթ կապիկների սեռ: Մարմնի երկ.՝ 40–75, պոչինը՝ 5–7 *սմ*: Հայտնի է 12 տեսակ՝ Հվ. և Արլ. Ասիայում, 1 տեսակ (մագոտ կամ անպոչ մակակ)՝ Աֆրիկայում և Եվրոպայում (Ջիբրալթար): Ամենակեր են: Կիսածառաբնակ են, խմբակային՝ վառ արտահայտված ստորակարգությամբ: Դաս. լաբորատոր կենդանիներ են, հատկապես՝ մակակ–ռեզուսը: 3 տեսակ գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՄԱԿԱՄՈՐՁԻ (epididymis), ***ամորձու*** հետին եզրին գտնվող գոյացություն: Ծածկված է սպիտակուց. պատյանով, ապա՝ *որովայնամզով*: Մ–ու պարենքիմը կազմված է ամորձացանցից ելնող 12–15 արտատար ծորանիկներից, որոնցից ամենաերկարը կոչվում է Մ–ու ծորան և շարունակվում որպես սերմնաածորան:

ՄԱԿԱՄՈՐՁՈՒ ԲՈՐԲՈՔՈՒՄ, **էպիդիդիմիտ** (հուն.՝ epididymis – ամորձու հավելում), ***մակամորձու*** բորբոք. հիվանդություն՝ գոնոռեայի, տուբերկուլոզի, այլ վարակիչ հիվանդությունների և վնասվածքների հետևանքով: Ախտանշանները՝ մակամորձու մեծացում, ցավեր ևն:

ՄԱԿԱՅԱՆՆՈՒ Անդրեյ Եգորովիչ (1920–1982), բելառուս գրող: ԲԽՍՀ ժող. գրող (1977): Հեղինակ է «Ներեցեք, խնդրում եմ» (1953), «Լևոնիխան՝ ուղեծրի վրա» (1961), «Երկչոտ առաքյալը» (1969), «Տրիբունալ» (1970), «Դեղահաբը՝ լեզվի տակ» (1973), «Հրդեհից տուժածները» (1980) կատակերգությունների:

ԲԽՍՀ Յ. Կոլասի անվ. Պետ. (1974), Յ. Կուպալայի անվ. գր. (1962) մրց–ներ:

ՄԱԿԱՆ, 1. ցուպ, գավազան, մահակ, 2. (պատմ.) գայիսոն, 3. երթևեկությունը կարգավորելու մետաղե ձող, 4. ծոված, թիակաձև ծայրով փայտ՝ հոկեյի գնդակը և տափօղակը հրելու համար, 5. փխբ. իմաստով՝ իշխանություն:

ՄԱԿԱՍԱՐԻ ՆԵՂՈՒՅ, Կալիմանտան և Սուլավեսի կղզիների միջև: Միացնում է Սուլավեսի և Ճավայի ծովերը: Երկ.՝ 500 *կմ*, լայն.՝ մոտ 200 *կմ*, խոր.՝ մինչև 2458 *մ*: Հոսանքները մուսսոնային են: Գլխ. նվինգստ–ները՝ Բալիկպապան (Կալիմանտան կղզի), Ուջունգպանդանգ (Սուլավեսի կղզի):

ՄԱԿԱՍԱՐՆԵՐ, ժողղ Ինդոնեզիայում (Սուլավեսի կղզու հվ–արմ–ում): Ընդհ. թիվը՝ 2 մլն (2000): Լեզուն՝ մակասար: Գիրը՝ XX դ–ի կեսերից (լատ. այբուբենով): Հիմնականում սուննի մահմեդական են:

ՄԱԿԱՍԵՎ, Բորիս Կոնստանտինովիչ (1907–1989), վավերագր. կինոյի ռուս օպերատոր, ռեժ.: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1965): Նրա նկարահանումներն ընդգրկվել են «Իսպանիայի իրադարձությունների մասին» (1935–37) թողարկումների, «Իսպանիա» (1939), «Գրենադա, Գրենադա, իմ Գրենադա...» (1968), «Ժողովրդական վրիժառուներ» (1943), «Ժողովուրդների դատաստանը» (1946) և այլ վավերագր. ֆիլմերում:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1947, 1948, 1951):

ՄԱԿԱՐ Ա. ԹԵՂՈՒՏՅԻ (1813–1891), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1885–ից: 1864–ից՝ Վիրահայոց թեմի, 1876–ից՝ Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ, 1882–ից՝ նաև *Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի* կաթողիկոսի տեղապահ: Ավարտին է հասցրել Էջմիածնի Մայր տաճարի նորոգումը:

ՄԱԿԱՐԱՎԱՆՔ, ճարտ. համալիր ՀՀ Տավուշի մարզի Աչաջուր գ–ից 3 *կմ* հվ–արմ.՝ Պայտաթափ լ–ան լանջին: Գլխ. եկեղեցին (1205) գմբեթավոր դահլիճ է՝ խորանի 2 կողմում երկհարկ ավանդատներով: Արտաքուստ՝ ուղղանկյուն, ներքուստ խաչաձև հատակագծով հնագույն եկեղեցուն (X–XI դդ., ծածկը և գմբեթը՝ XIII դ.) արմ–ից (գլխ. եկեղեցուն՝ հս–ից) կից է քառասյուն կենտրոնակազմ հորինվածքով գավիթը (1224–ից առաջ): Համալիրից արլ.՝ ներքուստ՝ խաչաձև (եռախորան), արտաքուստ՝ ութանիստ, կենտրոնագմբեթ հորինվածքով Սբ Աստվածածին եկեղեցին է (1198):

ՄԱԿԱՐԴԱԽՈՏ (Galium), **մածնի, կաթնախոտ**, տորոնազգիների ընտանիքի միամյա կամ բազմամյա խոտաբույսերի, հազվադեպ՝ կիսաթփերի ցեղ: Մոլախոտ է: Հայտնի է մոտ 400 տեսակ՝ հիմնականում՝ Հս. կիսագնդում, ՀՀ–ում՝ 31՝ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի և այլ մարզերում:

Դեղաբույս է. պատրաստուկներն օգտագործում են որպես միզամուղ, ցավազրկող, լուծողական: Սևանի և Սոսնովսկու Մ–երը (ՀՀ բնաշխարհիկներ), Քյափազին, Դեկենին, վալանտանմանը (կովկաս. բնաշխարհիկներ) գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

ՄԱԿԱՐԴԱԿԱՉԱՓ, տարողություններում, ջրավազաններում, տեխնոլոգ. ապարատներում հեղուկի մակարդակի չափման սարք: Լինում են գծային (չափումը՝ ձողաքանոնով), լողանային, հիդրոստատիկ. (*մանոմետրի* սկզբունքով աշխատող), էլ. (հպակների միացումով աշխատող), ռադիոիզոտոպ. և այլ Մ–ներ:

ՄԱԿԱՐԵՆԿՈ Անտոն Սեմյոնովիչ (1888–1939), ռուս. մանկավարժ, գրող: Աշակել է երեխային դաստիարակելու տեսություն ու մեթոդիկա: Հեղինակ է «30–ականի երթը» (1932), «Մանկավարժական պոեմ» (1935, հայ.՝ 1947), «Դրոշակներն աշտարակների վրա» (1938, հայ.՝ 1959) և այլ մանկավարժ. գործերի, նաև «Գիրք ծնողների համար» (1937, հայ.՝ 1953) մանկավարժ. թեմաներով

հոդվածների: Հայ. հրատարակվել են նաև «Մանկավարժական ընտիր երկեր» (1950), «Ընտանեկան դաստիարակության մասին» (1985) գրքերը:

ՄԱԿԱՐԵՎՄԿԻ Ալեքսանդր Իվանովիչ (1904–1979), ինքնաթիռաշինության բնագավառի ռուս գիտնական: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1968): Սոց. աշխ. հերոս (1957): Աշխ-ները վերաբերում են թռչող սարքերի կայունության հարցերին:

ԽՍՀՄ Պետ. (1949), Լենինյան (1957) մրց-ներ:

ՄԱԿ-ԱՐԹՈՒՐ (MacArthur) Դուգլաս (1880–1964), ամերիկ. բանակի գեն. (1944): ԵՀՊ-ի ժամանակ ղեկավարել է Հեռավոր Արևելքի ամերիկ. ԶՈՒ: Խաղաղ օվկ-ի հվ–արմ. մասի դաշնակից ԶՈՒ գլխ. հրամ. (1942–51), միաժամանակ, 1945-ից՝ նվաճող. զորքերի հրամ. Ճապոնիայում: 1950–51-ին Կորեական պատերազմում ղեկավարել է ամերիկ. և հվ-կորեական ԶՈՒ:

ՄԱԿԱՐԻՈՍ III (Makários, աշխարհիկ անունը՝ Միքայել Խրիստոդուլոս Մուսկոս, 1913–1977), Կիպրոսի նախագահ՝ 1960-ից, արք. և Կիպրոսի հուն. համայնքի էթնարխոս (առաջնորդ)՝ 1950-ից:

ՄԱԿԱՐԻՈՍ ՄԵԾ, Եգիպտացի (մոտ 300–մոտ 390), քրիստոնյա վանական-ճգնավոր, եկեղեցու հայր: Ճգնել է Եգիպտոսի հեռավոր անապատում: Հեղինակ է բարոյական-ճգնավոր. և բարոյախրատ. բնույթի ստեղծագործությունների: Ուղղափառ եկեղեցում հիշատակի օրը հունվ. 19-ն (փետր. 1) է, կաթոլիկ եկեղեցում՝ հունվ. 15-ը:

ՄԱԿԱՐՅԱՆ Ալբերտ Արշավիրի (ծ. 1958), գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (2002), պրոֆ. (2004): Հեղինակ է «Արևմտահայ գրական դիմանկարը» (2002), «Հարություն Ալամդարյան» (2005, 2-րդ հրտ.՝ 2013) և այլ աշխ-ների, «Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում» (2004) գրքի:

ՄԱԿԱՐՅԱՆ Ալեքսեյ Արշալույսի (ծ. 1940), պատմաբան: Աշխ-ները վերաբերում են ՀՄՊ-ի ժամանակ Այսրկովկասի հանրապետությունների քաղ., հաս. կազմ-յունների գործունեությանը, հայ ժողղ-ի մասնակցությանը ԵՀՊ-ին և այլ հարցերի:

ՄԱԿԱՐՅԱՆ Անուշավան Մակարի (1910–1973), գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1968): Հեղինակ է «Միքայել Նալբանդյանը և արևմտահայ դեմոկրատիան» (1946), «Մ. Նալբանդյանը գրող» (1968), «Երվանդ Օտյանի կյանքը և հրապարակախոսական գործունեությունը» (1977) և այլ աշխ-ների:

ՄԱԿԱՐՅԱՆ Արտակ Սեյրանի (ծ. 1971), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (2009): Աշխ-ները վերաբերում են աշխարհատնտ. հարաբերությունների գլոբալացման, տնտ. կապերի սոցիալ., տարածաշրջ. և միջտարածաշրջ. ինտեգրման, գլոբալ կարգավորման հարցերին: ՌԲՆԳԱ և ՌԲՏԳԱ, Նյու Յորքի ԳԱ անդամ:

ՄԱԿԱՐՅԱՆ Լևոն Սամիկոնի (1941–2000), ճարտարագետ-մեխանիկոս: Տեխ. գիտ. դ-ր (1995), պրոֆ. (1996): ՀՃԱ ակադ. (1996): 1975–89-ին՝ Նուռնուսի քարի մշակման գործարանի, 1982–91-ին՝ «Հայարդշինանյութեր» ԱՄ-ի գլխ. տնօրեն, 1991–93-ին՝ «Հայմարմարգրանիտ» ԱՄ-ի խորհրդի նախագահ, 1993-ից՝ գլխ. տնօրեն: Աշխ-ները վերաբերում են քարամշակման գործիքաշինության հարցերին:

ՄԱԿԱՐՅԱՆ Շաքե Կարապետի (ծ. 1931), երգչուհի (սոպրանո), դաշնակահարուհի: 1973–81-ին՝ Թեհրանի կոնսերվատորիայի մեներգչուհի (Լյուդմիլա՝ Բ. Սմետանայի «Վաճառված հարսնացուն», Բերտա, Թիզբե՝ Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», «Մոխրոտը», ևն): Համերգ. երկացանկում՝ Ջ. Վերդիի, Ջ. Պուչչինիի, Գ. Դոնիցետտիի, Կոմիտասի, Ա. Սայիլյանի, Ա. Հովհաննեսի, Ն. Գալանդերյանի և ուր. գործերից:

ՄԱԿԱՐՈՎ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (ծ. 1950), ռուս կենսաֆիզիկոս, մոլ. կենսաբան: ՌԴԱ ակադ. (2008, թղթ. անդամ՝ 2003-ից): ՌԴԱ մոլ. կենսբ-յան ինստ-ի տնօրեն (2003-ից): «Մոլեկուլային կենսաբանություն» (ռուս.) հանդեսի գլխ. խմբ.: Հաստատել է քաղցկեղ. բջիջների ոչնչացումը որոշող ռիբոնուկլեազների և բջջ. բաղադրիչների մոլ. բնութագիրը: Սպիտակուցների և պեպտիդների մոլ-ներում հայտնաբերել է երկրորդային կառուցվածքի նոր տեսակ: Կենսաչիպերի տեխնոլոգիայի հիման վրա զարգացրել է ախտածին բակտերիաների և վիրուսների վերլուծության նոր ուղղություններ:

ՄԱԿԱՐՈՎ Ալեքսեյ Ալեքսանդրովիչ (ծ. 1937), էներգետիկայի բնագավառի ռուս գիտնական: ՌԴԱ ակադ. (2006, թղթ. անդամ՝ 1984-ից): ՌԴԱ էներգետիկ. հետազոտությունների ինստ-ի տնօրեն (1986–2006): Աշխ-ները վերաբերում են էներգետիկ. հավասարակշռության լավարկային կառուցվածքի տես. հիմունքներին և համակարգված հետազոտություններին:

ԽՍՀՄ ԳԱ Գ. Մ. Կրժիժանովսկու անվ. (1970), ՌԴ Կառ-յան (2011) մրց-ներ:

ՄԱԿԱՐՈՎ Ասկոլդ Անատոլևիչ (1925–2000), բալետի ռուս արտիստ: ՌԽՖՍՀ (1957), ԽՍՀՄ (1983) ժող. արտիստ: 1943–70-ին՝ Լենինգրադի ՕԲԹ-ի մենապարող (Սպարտակ՝ Ա. Խաչատրյանի «Սպարտակ», Ալի Բատիր՝ Ֆ. Ջ. Յարուլլինի «Շարուլե», Ձկնորս՝ Ա. Պ. Պետրովի «Հուսո ափը», ևն), 1976-ից՝ «Խորեոգրաֆիկ մանրապատկերներ» խմբի գեղ. ղեկ.:

ԽՍՀՄ Պետ., Երիտասարդների և ուսանողների համաշխ. III փառատոնի 1-ին (Բեռլին, երկուսն էլ՝ 1951) մրց-ներ:

ՄԱԿԱՐՈՎ Գեորգի Ավետիսի (1894–1966), կինոռեժ.: 1916-ից նկարահանվել է Ա. Ա. Խանժոնկովի կինոֆաբրիկայում, 1923-ից մասնակցել վրաց. կինոյի կայացմանը: Նկարահանվել է «Կարմիր սատանի ճտերը» (1923) կինոնկարում: «Տոնավաճառի կինը» (1928, ըստ Յ. Օ՚Նիլի), «Ճեպընթաց № 2» (1929), «Բաժանում» (1930), «Մինչ նոր հանդիպում» (1934, վրաց. կատակերգ. կինոյի լավագույն նմուշներից է) ֆիլմերի ռեժ-ն է:

ՄԱԿԱՐՈՎ Իգոր Միխայլովիչ (1927–2013), ավտոմատացման բնագավառի ռուս գիտնական: ՌԴԱ ակադ.՝ 1987-ից: ՌԴԱ գլխ. գիտ. քարտուղար (1988–96): Աշխ-ները վերաբերում են ինքնաշխատ կառավարման համակարգերի տեսության, ավտոմատացման տեխ. միջոցների հաշվարկի ու կառուցման սկզբունքներին:

ԽՍՀՄ (1984), ՌԴ (1995) Պետ., ՌԴ Կառ-յան (2000) մրց-ներ:

ՄԱԿԱՐՈՎ Նիկոլայ Ֆեոդորովիչ (1914–1988), զենքի ռուս կոնստրուկտոր: Սոց. աշխ. հերոս (1974): Ստեղծել է ատրճանակ (ՊՄ), ավիահրանոթ (ԱՄ-23, Ն. Մ. Աֆանասևի հետ): ԽՍՀՄ Պետ. մրց. (1952, 1967):

ՄԱԿԱՐՈՎ Օլեգ Գրիգորևիչ (1941–2003), ԽՍՀՄ տիեզերագնաց օդաչու: Տեխ. գիտ. թեկնածու: ԽՄ հերոս (1973, 1978): Թռել է «Սոյուզ-12» (1973-ի սեպտ.), «Սոյուզ-18-1» (1975-ի ապրիլ), «Սոյուզ-26, -27» տիեզերանավերով և «Սալյուտ-6» (1978-ի հունվ.) տիեզերակայանով, «Սոյուզ Տ-3» տիեզերանավով և «Սալյուտ-6» (1980-ի նոյեմբ–դեկտ.) տիեզերակայանով: Թռիչքների ընդհ. տևողությունը՝ 20 օր 17 *ժ* 22 *ր* 12 *վ*:

ՄԱԿԱՐՈՎԱ Ինննա Վլադիմիրովնա (ծ. 1926), ռուս. կինոդերասանուհի: ՌԽՖՍՀ (1971), ԽՍՀՄ (1985) ժող. արտիստ: Նկարահանվել է «Երիտասարդ գվարդիա», «Բարձունք», «Կանայք», «Բալզամինովի ամուսնությունը», «Անպատասխան սեր», «Պուշկին: Վերջին մենամարտը», «Հարսնացու հյուսիսից» (1975, «Երևան» ստուդիա) և այլ ֆիլմերում: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949):

ՄԱԿԱՐՈՎԱ Տամարա Ֆեոդորովնա (1907, այլ տվյալներով՝ 1902–1997), ռուս կինոդերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1950): Սոց. աշխ. հերոս (1982): Ս. Ա. *Գերասիմովի* կինը: Նկարահանվել է «Յոթ խիզախներ», «Ուսուցիչը», «Դիմակահանդես», «Պետրոսի պատանեկությունը», «Լև Տոլստոյ», «Միրել մարդուն» և այլ ֆիլմերում:

ԽՍՀՄ Պետ. (1941, 1947), «Նիկա» (1994) մրց-ներ:

ՄԱԿԱՐՏ (Makart) Հանս (1840–1884), ավստրիացի գեղանկարիչ: Ստեղծել է գր. թեմաներով և պատմ. սյուժեներով կտավներ («Ժանտախտ Ֆլորենցիայում», 1868): 1869-ից Վիեննայում՝ Ռինգշտրասեի նոր հաս. շենքերում (Գեղարվ-ի ակադ., «Բուրգթեատր», Գեղարվ-ի և պատմության թանգարան ևն), սալոն. ակադեմիզմի ոգով ստեղծել է մոնումենտալ-դեկորատիվ գործեր:

ՄԱԿԲԱՅ, չթեքվող խոսքի մաս. ցույց է տալիս գործողության հատկանիշ, առարկայի հատկանիշի հատկանիշ: Որոշ Մ-ներ ունեն համեմատության աստիճաններ: Տարբերում են տեղի (օր.՝ վեր, ամենուր, դեմ առ դեմ ևն), ժամանակի (օր.՝ այժմ, նախօրոք, երբեք ևն), ձևի (օր.՝ արագորեն, բարոյապես, հապճեպ ևն), չափ ու քանակի (օր.՝ բազմիցս, գրեթե, կրկին ևն), ընդհանր. (օր.՝ շարունակ, մերթընդմերթ ևն) Մ-ներ:

ՄԱԿ-ԴԻՎԻԹ (McDivit) Ջեյմս (ծ. 1929), ԱՄՆ աստղագնաց, բրիգադի պաշտոնաթող գեն.: Թռել է «Ջեմինի-4» (1965-ի հունիս) և «Ապոլոն-97» (1969-ի մարտ) տիեզերանավերով:

ՄԱԿԴԻՐ, էպիտետ, ոճաբան. արտահայտչամիջոց. գեղ. խոսքում առանձնահատուկ կերպով բնութագրում է առարկան, երևույթը, գործողությունը (օր.՝ ձյունաճերմակ մազեր, խոհուն աչքեր, պողպատակուռ ձեռքեր ևն):

ՄԱԿԴՈՆԱԼԴ (Macdonald) Ջեյմս Ռամսեյ (1866–1937), Մեծ Բրիտանիայի Լեյբորիստ. կուս-յան հիմնադիր–առաջնորդներից: 1924-ին և 1929–31-ին՝ վարչապետ: 1924-ին Մ-ի կառ-յունը դիվանագիտ. հարաբերություններ է հաստատել ԽՍՀՄ-ի հետ: 1931–35-ին, դուրս գալով Լեյբորիստ. կուս-յունից, գլխավորել է կոալիցիոն (այսպես կոչված ազգ.) կառ-յունը:

ՄԱԿ-ԴՈՒԳԱԼ (McDougall) Ուիլյամ (1871–1938), անգլիացի հոգեբան: 1920-ից՝ ԱՄՆ-ում: Հոգեկան կյանքի հիմքը համարել է «հորմեն» (հուն.՝ horme – ձգտում,

մղում, այստեղից էլ՝ Մ–ի հայեցակարգի անվանումը՝ հորմիկ. հոգեբ–յուն)՝ բնածին բնազդները և հակումները կամ ձեռքբերովի զգացմունքները:

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ (ՀԱՅԿԱԿԱՆ) ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ, կայսեր. հարստություն Բյուզանդիայում՝ 867–1056–ին: Հիմնադիրը՝ Մակեդոնիա բանակաթեմում ծնված հայազգի Վասիլ (Բարսեղ) I: Մ. հ–յան կառավարման ժամանակաշրջանում Բյուզանդիան վերստին հասել է իր հզորության բարձրակետին: 1045–ին նվաճել են Բագրատունյաց Հայաստանի հողերը և վերացրել թագավորությունը: Կայսրերից հայտնի են ***Վասիլ II Բուլղարասպանը*** (976–1025), ***Կոնստանդին IX Մոնոմախոսը*** (1042–55): Վերջին ներկայացուցիչը ***Թեոդորա*** կայսրուհին էր (1042, 1055–56):

ՄԱԿԵԴՈՆԱՑԻՆԵՐ (ինքնանվանումը՝ մակեդոնցի), հվ–սլավոն. ժողդ., Մակեդոնիայի Հանրապետության հիմն. բնակչությունը: Ընդհ. թիվը՝ շուրջ 1,3 մլն (2002): Ապրում են նաև Հունաստանի հս–ում («սլավոններ» կամ «սլավոմակեդոնացիներ», մինչև 50 հզ.), Բուլղարիայի հվ–արմ–ում (5,1 հզ.), Ալբանիայի արլ–ում (4,1 հզ.), Սերբիայի հս–ում (25,8 հզ.) և այլուր: Լեզուն՝ մակեդոն.: Հիմնականում քրիստոնյա են (ուղղափառ), կան մահմեդականներ (թորբեշի):

ՄԱԿԵԴՈՆԵՐԵՆ, ***մակեդոնացիների*** լեզուն, Մակեդոնիայի պետ. լեզուն: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի սլավոն. ճյուղին: Գրի հիմքում ***կիրիլիցան*** է:

ՄԱԿԵԴՈՆԻԱ, պատմ. մարզ Բալկանյան թ–կղզու կենտր. մասում: Տարածքում մ. թ. ա. V–II դդ–ում գոյություն է ունեցել **Հին Մակեդոնիա** անտիկ հուն. պետությունը: Այստեղից է իր լեգենդար արշավանքն սկսել ***Ալեքսանդր Մակեդոնացին*** մ. թ. ա. 148–ից՝ Մակեդն. պատերազմում պարտվելով Հռոմին, վերածվել է հռոմ. պրովինցիայի: XIV դ–ի վերջից տարածքն անցել է թուրք. տիրապետության տակ: 1912–13–ի ***Բալկանյան պատերազմների*** հետևանքով բաժանվել է Սերբիայի (Վարդարյան Մ.), Հունաստանի (Էգեյան Մ.) և Բուլղարիայի (Պիրինյան երկրամաս) միջև:

ՄԱԿԵԴՈՆԻԱ, Մակեդոնիայի Հանրապետություն (Република Македонија), պետություն Հվ. Եվրոպայում՝ Բալկանյան թ–կղզու կենտր. մասում: Սահմանակից է Հունաստանին, Բուլղարիային և Սերբիային: Տարածքը՝ 25,7 հզ. *կմ²*, բն.՝ 2,1 մլն (2013): Մայրաքաղաքը՝ ***Սկոպիե***: Պետ. լեզուները՝ մակեդոն. և ալբան.: Կառավարման ձևը՝ խորհրդարանահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Բնակչության մեծ մասը քրիստոնյա է (ուղղափառ): Բաժանված է 84 համայնքի: Անդամակցում է ՄԱԿ–ին, ԵԱՀԿ–ին, ԵԽ–ին ևն: Անցում. տնտ–յամբ երկիր է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 9 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է պարեն. ապրանքներ, գինի, մեքենաներ և սարքավորումներ ևն, ներմուծում մեքենաներ ու սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ դենար:

Ստեղծվել է Վարդարյան Մակեդոնիայի (տես ***Մակեդոնիա,*** պատմ. մարզ) տարածքում, որը 1918–ին Սերբիայի կազմում մտել է Սերբերի, խորվաթների և սլովենների թագավորության (1929–ից՝ ***Հարավսլավիա***) մեջ: 1941–ի ապրիլին Մ–ի տարածքը գրավել են միապետ. Բուլղարիան և ֆաշիստ. Իտալիան: 1944–ին ազատագրել է Հարավսլավիայի ժողովրդաազատագր. բանակը: 1945–91–ին եղել է Հարավսլավիայի կազմում՝ հանրապետության կարգավիճակով: 1991–ին ընդունվել է նոր սահմանադրություն, որով Մ. հռչակվել է «ինքնիշխան, ինքնուրույն և ժողովրդավարական պետություն»:

ՄԱԿԵՆԶԵՆ (Mackensen) Ավգուստ (1849–1945), գերմանացի գեն–ֆլդմ. (1915): ԱՀՊ–ի ժամանակ՝ Արլ. Պրուսիայում կորպուսի, Գալիցիայի ճեղքման, Սերբիայի և Ռումինիայի նվաճման ժամանակ (1915–ից)՝ զորքերի հրամ.:

ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԱԿՏԻՎ ՆՅՈՒԹԵՐ (ՄԱՆ), ֆազերի (որոնցից մեկը ջուրն է) բաժանման մակերևույթի վրա ադսորբվելու ունակ նյութեր, որոնց չնչին քանակները խիստ փոքրացնում են ***մակերևութային լարվածությունը***: Օրգ. միացություններ են, որոնց մոլ–ները կազմված են միջավայրի հետ տարբեր կերպ փոխազդող ատոմ. խմբերից՝ ածխաջրածնային ռադիկալներից (հիդրոֆոբ) և բևեռային (հիդրոֆիլ՝ –COOH, –OH, $–NH_2$ ևն) խմբերից: Տարբերում են ցածրմոլ., բարձրմոլ., իոնական և ոչ իոնական, ինչպես նաև միցելներ առաջացնող ու չառաջացնող ՄԱՆ: Կարգավորում են նյութերի թրջելությունը, հեշտացնում մանրացումը, մեծացնում կամ փոքրացնում են սուսպենզիաների, էմուլսիաների, փրփուրի կայունությունը: Օգտագործում են որպես լվացամիջոցներ, օճառներ, ֆլոտոռեագենտներ, մետաղների կոռոզիայի արգելակիչներ, մակարդիչներ ևն:

ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ, ֆիզքիմ. երևույթներ, որոնք պայմանավորված են այդ ֆազը մեկ ուրիշ ֆազից բաժանող սահմանի վրա մասնիկների միջև փոխազդեցության ուժերի անհավասարակշռությամբ: Մ. ե. են ***մակերևութային լարվածությունը, մազական երևույթները***, մակերևութ. ակտիվությունը, ***թրջումը,*** մակակլանումը ևն:


ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱ, ֆազի մակերևույթին մասնիկների փոխազդեցություններով պայմանավորված նյութի պոտենցիալ էներգիայի ավելցուկը ծավալում նրա էներգիայի համեմատությամբ: Բնութագրում է նոր ֆազի առաջացման աշխ–ը, պինդ մարմնի ամրությունը, մակերևութ. և մազական երևույթները, դիսպերս համակարգերի կայունությունը ևն:

ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԻՆՏԵԳՐԱԼ, 3 փոփոխականների որոշյալ ինտեգրալ, որում ինտեգրումը կատարվում է տրված մակերևույթի մակերեսով (I կարգի Մ. ի.) կամ կոորդինատ. հարթության վրա նրա պրոյեկցիաներով (II կարգի Մ. ի.): Որոշակի պայմաններում այն կարելի է հանգեցնել եռակի ինտեգրալի (***Օստրոգրադսկու բանաձև***):

ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ, միջֆազ. մակերևույթի մեխ. և թերմոդինամիկ. բնութագիր, որը բնորոշվում է միջմոլ. փոխազդեցություններով և մակերևութ. շերտի կառուցվածքով: Մ. լ–յան մեծությունը հավասար է այն աշխ–ին, որը ծախսվում է ֆազերի բաժանման մակերևույթի միավոր մակերեսի ստեղծման համար հաստատուն ջերմաստիճանում: Հեղուկի Մ. լ. հաճախ բնորոշում են որպես ֆազերի բաժանման մակերևույթի եզրագծի միավոր երկ–յան վրա ազդող և այդ մակերևույթը մինչև փոքրագույնի կրճատել ձգտող ուժ: Մ. լ–յան շնորհիվ հեղուկի կաթիլը, արտաքին փոխազդեցության բացակայության դեպքում, ընդունում է գնդի ձև:

ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹ (մաթ.), երկրչփ. մարմինը կամ անսահմանափակ տիրույթն արտաքին տարածությունից կամ այլ մարմնից (տիրույթից) անջատող սահման: Վերլուծ. երկրչփ–յունում Մ. տարածության մեջ արտահայտվում է հավասարումներով, որոնք իրար են կապում դրանց կետերի կոորդինատները. օր.՝ հարթության հավասարումն է $Ax + By + Cz + D = O$, գնդի հավասարումը՝ $x^2 + y^2 + z^2 = 0$:

ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ՓՈՒՆԿ, հարթության մեջ ստացված պատկեր՝ տվյալ մակերևույթի կետերի հարթության հետ այնպիսի համընկնման դեպքում, երբ գծերի երկ–յունները մնում են անփոփոխ: 1–ին նկ–ում պատկերված է շրջ. կոնի փռվածքը, 2–ում՝ շրջ. գլանի փռվածքը՝ նրա վրա տարված պտուտակաձև գծերով: Կորի փռվածքի մասին տես ***Էվոլվենտ***:



ՄԱԿԵՐԻԿԱՄՆԵՐ, մարդու և ողնաշարավոր կենդանիների ներզատիչ գեղձ. զույգ օրգան: Կեղևային շերտն արտադրում է կորտիկոստերոիդներ, մասամբ՝ իգական և արական սեռ. հորմոններ, ուղեղային շերտը՝ ադրենալին և նորադրենալին: Կարևոր դեր են կատարում նյութափոխանակության կարգավորման և անբարենպաստ պայմանների հանդեպ օրգանիզմի հարմարման մեջ: Մ–ի ախտահարումը հանգեցնում է հիվանդությունների (օր.՝ բրոնզախտ) առաջացման:

ՄԱԿ–ԹԱԳԱՐԹ (McTaggart) Ջոն Էլիս (1866–1925), բրիտանացի փիլ.: Հեգելի փիլ–յունը մեկնաբանել է ***պերսոնալիզմի*** ոգով՝ համադրելով այն Գ. ***Լայբնիցի*** մոնադների մասին ուսմունքի հետ: Ըստ Մ–Թ–ի՝ աշխարհի հիմքը անհատների «հոգևոր համակեցություն» է:

ՄԱԿ–Ի ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, ՅՈՒՆԵՍԿՕ (United Nations Educational Scientific and Cultural Organization), ՄԱԿ–ի մասնագիտացված հաստատություն: Ստեղծվել է 1946–ին: Նպատակը կրթության, գիտ–յան և մշակույթի ասպարեզում պետությունների միջև համագործակցության զարգացման միջոցով խաղաղության ու միջազգ. անվտանգության ամրապնդմանը նպաստելն է, մարդու հիմն. իրավունքներն ու ազատությունները ապահովելը: Իրականացնում է տարբեր ծրագրեր՝ անգրագիտ–յան վերացում, խտրականության դեմ պայքար կրթության ասպարեզում, օժանդակություն ազգ. կադրերի պատրաստմանը, ազգ. մշակույթների ուսումնասիրում, միջազգ. համագործակցություն գիտ–յան բնագավառում:

Մշակութ. ժառանգության ոլորտում համագործակցությունն իրականացվում է «Մշակութային և բնական համաշխարհային ժառանգության պահպանման մասին» (1972) և «Ոչ նյութական մշակութային

ժառանգության պաշտպանության մասին» (2003, ՀՀ-ում վավերացվել է 2006-ին) համաձայնագրերով: Հայաստանից ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխ. ժառանգության ցանկում գրանցված են՝ Հաղպատի և Սանահինի վան. համալիրները, Էջմիածնի Մայր տաճարը, Հռիփսիմե, Գայանե, Շողակաթ եկեղեցիները և Զվարթնոց տաճարի ավերակները, Գեղարդը և Ամադու կիրճը, ոչ նյութ. մշակութ. ժառանգության ցանկում՝ խաչքարի արվեստը, դուդուկի երաժշտությունը, «Սասունցի Դավիթ» էպոսը, լավաշի պատրաստումը, մարդկության հիշողությունների ցանկում՝ Մոնդ-ի ձեռագրերի հավաքածուն, Արամ Խաչատրյանի երաժշտությունը: 2015-ին ուներ 195 անդամ պետություն: Նստավայրը՝ Փարիզում: Հրատարակում է «Կուրիեր ՅՈՒՆԵՍԿՕ» հանդեսը (15 լեզվով) և 20 այլ պարբ-ներ:

ՄԱԿ-Ի ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ, ՅՈՒՆԻՍԵՖ (United Nations Children's Fund), ստեղծվել է 1946-ին՝ հետպատերազմյան քայքայված եվրոպ. երկրների երեխաներին օգնելու նպատակով (ներկա անունով՝ 1953-ից): 1950-ից ուշադրության կենտրոնում են զարգացող երկրները: Նստավայրը՝ Նյու Յորքում, գրասենյակներ ունի նաև Ժնևում, մի շարք զարգացող երկրներում:

Խաղաղության Նոբելյան մրց. (1965):

ՄԱԿ-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆ, ՄԱԿ-ի գլխ. դատ. մարմինը: Հիմնադրվել է 1945-ին: Դատարանի ստատուտը ՄԱԿ-ի կանոնադրության անկապտելի մասն է, և նրա բոլոր անդամները միաժամանակ համարվում են դատարանի ստատուտի մասնակից: ՄԱԿ-ի անդամ չհանդիսացող պետությունը կարող է ստատուտի մասնակից դառնալ ԱԽ-ի հանձնարարականով, Գլխ. ասամբլեայի սահմանած պայմաններով ընտրվում է 9 տարի ժամկետով, 15 դատավորների կազմով, որը 3 տարին մեկ նորացվում է մեկ երրորդով:

ՄԱԿ-Ի ՊԱՐԵՆԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, ՄԱԿ-ի մասնագիտացված կազմ-յուն: Ստեղծվել է 1945-ին (նստավայրը՝ Հռոմ): Նպատակները՝ կենսամակարդակի և սննդի որակի բարձրացում, գղտ. ապրանքների արտադր-յան և արդյունավետ բաշխման խթանում, գյուղ. բնակչության կենսապայմանների բարելավում և սովի նվազեցում: ՄԱԿ-ի համակարգում գործող ամենամեծ մասնագիտացված կառույցն է. անդամակցում են 194 երկիր, 1 կազմ-յուն (ԵՄ) և 2 ասոցացված անդամ, ՀՀ-ն՝ 1993-ից: 2003-ից կազմ-յունում գործում է ՀՀ ներկայացուցչությունը:

ՄԱԿ-Ի ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ, ՄԱԿ-ի գլխ. մարմիններից: Հիմն. խնդիրը միջազգ. տնտ. և սոցիալ. համագործակցության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելն է: Առաջարկություններ է անում ՄԱԿ-ի Գլխ. ասամբլեային, նախապատրաստում է համաձայնագրերի նախագծեր, համակարգում ՄԱԿ-ի մասնագիտացված հաստատությունների տարբեր տարածաշրջանների համար ստեղծված նույնանուն հանձնաժողովների գործունեությունը ևն: 2016-ին ուներ 54 անդամ պետություն (ընտրվում են 3 տարի ժամկետով, յուրաքանչյուրը 1 ձայնի իրավունքով): Նստավայրը՝ Նյու Յորքում:

ՄԱԿ-Ի ՔԱՂԱՏԱՑԻԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ, ՄԱԿ-ի մշտապես գործող մարմին Նյու Յորքում: Կազմված է Գլխ. քարտուղարից և նրա նշանակած անձնակազմից: Հիմն. գործառույթը ՄԱԿ-ի մարմինների, հանձնաժողովների և համաժողովների վարչատեխ. սպասարկումն է:

ՄԱԿԻՆՏՈՇ (Macintosh) Չառլզ Ռեննի (1868–1928), շոտլանդացի ճարտ., դիզայներ: Մողեռն ոճի նախակարապետներից, «Գլազգո ոճի» (Արվ-ի դպրոց Գլազգոյում, 1896–1909) հիմնադիր: Զևավորել է ինտերիերներ, նախագծել կահույքի տեսակներ:

ՄԱԿ-ԼԵՅՆ (MacLaine, Մաքլին Բիտտի) Շեռլի (ծ. 1934), ամերիկացի դերասանուհի: Ու. *Բիտտիի* քույրը: 1955-ից նկարահանվել է կինոյում («Սիրելի Չարիտի», «Բնակարան», «Լինելով այնտեղ», «Տիկին Սուզացկա», «Պողպատե մազնոլիաներ», «Բացիկներ անդունդի եզրից» ևն): Նկարահանել է «Երկնքի մյուս կեսը», «Չինական հիշողություններ», «Կնոջ օրը» վավերագր. ֆիլմերը: «Օսկար» (1954):

ՄԱԿԻՆՅԱՆ Պողոս Մկրտչի (1884–1938), կուս-պետ. գործիչ, գրաքննադատ, թարգմանիչ, հրապարակախոս, խմբ-հրտ.: 1921–22-ին՝ ՀԽՍՀ ՆԳ ժողկոմ, ապա՝ լուսժողկոմ: 1922–27-ին դիվանագիտ. աշխ. է կատարել Կ. Պոլսում, Միլանում, Փարիզում: Եղել է ԽՍՀՄ ԳԱ Անդրկովկասյան մասնաճյուղի գիտքարտուղարը: 1910–12-ին Մոսկվայում Վահան *Տերյանի* և ուր. հետ կազմել և խմբագրել է «Գարուն» ալմանախի 3 գրքերը, Վ. Յ. *Բրյուսովի* հետ մասնակցել «Հայ պոեզիան հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (1916) անթոլոգիայի կազմմանը, 1923–25-ին կազմել և խմբագրել Վ. Տերյանի երկերի քառահատորը: Հեղինակ է Հ. Թումանյանին և Ա. Իսահակյանին նվիրված աշխ-ների («Դիմագծեր», 1912), «Հայ գրականության ժողովածու»-ի (1916) առաջաբանի («Հայ գրականության ակնարկ»): Հայ. է թարգմանել Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական մանիֆեստը» (1918), Մ. Սերվանտեսի «Դոն Կիխոտ» (1934) վեպը, ռուս.՝ Հ. Թումանյանի, Շիրվանզադեի, Գ. Սահարու, Մ. Արմենի գործերից: Անհատի պաշտամունքի զոհ:

ՄԱԿ-ԼԱՖԼԻՆ (McLaughlin) Ջոն (ծ. 1942), անգլիացի ջազ. կիթառահար, կոմպոզիտոր: Ջազ-ռոք և ֆյուժն ոճերի հիմնադիրներից: 1969-ից՝ ԱՄՆ-ում: Թողարկել է ալբոմներ («Էքստրապոլյացիա», 1968, «Ապոկալիպսիս», 1974):

ՄԱԿԼԵՈԴ (Macleod) Ջոն Ջեյմս Ռիկարդ (1876–1935), շոտլանդացի բժիշկ, ֆիզիոլոգ: 1916-ից՝ Կանադայում: Ուսումնասիրել է ածխաջրերի մետաբոլիզմը, շաքարախտը, հայտնագործել (1922, Ֆ. Գ. *Բանտինգի* և ուր. հետ) ինսուլինը: Նոբելյան մրց. (1923, Ֆ. Գ. Բանտինգի հետ):

ՄԱԿԼԵՐ (Macler) Ֆրեդերիկ (1869–1938), ֆրանսիացի հայագետ, թարգմանիչ: Պրոֆ.: 1919-ին Շ. Դիլի, Ա. Մեյեի և Վ. Պերարի հետ հիմնադրել է «Հայագիտական ընկերությունը»: 1920–37-ին՝ «Ռևյու դեզ էթյուդ Արմենիեն» հանդեսի հիմնադիր-խմբ. (Ա. Մեյեի հետ): Հեղինակ է շուրջ 100 հայագիտ. գործերի («Դանիելի անվավեր հայերեն հայտնությունները», 1888, «Հայաստանի շուրջը», «Նոր հայերի ծագումը», 1915, «Երաժշտությունը Հայաստանում», երկուսն էլ՝ 1917, «Հայերը Սիրիայում և Պաղեստինում», 1919, «Հայոց եկեղեցին», «Հայկական ճարտարապետություն», երկուսն էլ՝ 1920, «Հայ ազգը, նրա անցյալն ու ցավերը», 1924, ևն): Թարգմանել և կազմել է հայկ. ժող. հեքիաթների ու դից. զրույցների ժող-ներ («Հայկական լեգենդներ և ավանդազրույցներ», 1911), «Ժամանակակից հայերենի քրեստոմատիա» (1932) ևն:

ՄԱԿԼՈՐԵՆ (Maclaurin) Քոլին (1698–1746), շոտլանդացի մաթեմատիկոս: Աշխ-ները վերաբերում են մաթ. վերլուծությանը, կորերի տեսությանը, մեխանիկային: Հայտնի է Մ-ի շարքը:

ՄԱԿԼՈՐԵՆԻ ՇԱՐՔ (մաթ.), աստիճանական շարք $f(0) + f'(0)x/1! + f''(0)x^2/2! + ... + f^{(n)}(0)x^n/n! +...$, որտեղ $f^{(n)}(0)$-ն n-ական ածանցյալի արժեքն է կամայական 0 կետում: Մ. շ. *Թեյլորի շարքի* մասնավոր դեպքն է: Անվանվել է Ք. *Մակլորենի* անունով:

ՄԱԿԼՈՒՐԱ (Maclura), **մակլոր**, թթազգիների ընտանիքի տերևաթափ, երկտուն ծառեր: ՀՀ-ում հանդիպում է 1 տեսակ՝ Մ. նարնջագույնը: Աճեցնում են ՀՀ ստորին և միջինլեռն. գոտիներում, Արաքսի հովտում: Բարձր.՝ 18–20 *մ*, սաղարթը՝ խիտ, ճյուղերը՝ փշոտ: Բնափայտից և արմատներից ստանում են դեղին ներկ (սանդալ):

ՄԱԿ-ՄԱՀՈՆ (Mac-Mahon) Պատրիս դը (1808–1893), Ֆրանսիայի նախագահ՝ 1873–79-ին, մարշալ, դուքս: 1870–71-ի ֆրանս-պրուս. պատերազմի ժամանակ բանակի հրամ., պարտվել է Սեդանի ճակատամարտում (1870): Վերսալցիների բանակի հրամ., 1871-ին ճնշել է Փարիզի կոմունան:

ՄԱԿ-ՄԻԼԱՆ, Մակ-Միլլան (MacMillan), Քեննեթ (1929–1992), բալետի անգլիացի արտիստ, բալետմայստեր: 1970–92-ին՝ Մեծ Բրիտանիայի (տարբեր տարիների) թագավոր. բալետի, «Ամերիկան Բալլե Թիեթր»-ի, «Հյուսթոն Բալլե»-ի գեղ. ղեկ.: Մ-ի բեմադրությունները (Ս. Ս. Պրոկոֆևի «Ռոմեո և Ջուլիետ», 1965, «Մայեռլինգ»՝ ըստ Ֆ. Լիստի երաժշտության, 1978, ևն) առանձնանում են արտահայտչականությամբ, կերպարայնությամբ, ճկուն պլաստիկայով:

ՄԱԿՈՎՍԿԻ Վլադիմիր Եգորովիչ (1846–1920), ռուս. գեղանկարիչ: Ս. Պետերբուրգի գեղարվ-ի ակադ-ի անդամ (1893): Ստեղծել է քաղաք. կենցաղի տեսարաններ («Պարզաբանում», 1889–91), սոցիալ-քննադատ. թեմաներով նկարներ («Բանկի ննակցումը», 1881), մտավորականների կերպարներ («Երեկույթ», 1875–97): Նրա «Գյուղացի երեխաներ» (1880), «Քաղաքագետներ» (1884) և այլ գործեր ՀԱՊ-ում են:

ՄԱԿՍԱԿՈՎԱ Լյուդմիլա Վասիլևնա (ծ. 1940), ռուս. դերասանուհի: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1980): Մ. Պ. *Մակաակովայի* դուստրը: 1961-ից՝ Մոսկվայի Ե. Վախթանգովի անվ. թատրոնի դերասանուհի (Աննա՝ «Աննա Կարենինա»՝ ըստ Լ. Ն. Տոլստոյի, Կորինկինա՝ Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», «Կոմսուհի՝ Ա. Ս. Պուշկինի «Պիկովայա դամա», Վոյնիցկայա՝ Ա. Պ. Չեխովի «Քեռի Վանյա», ևն): Նկարահանվել է «Վատ լավ մարդը», «Ուղևորություններ հին ավտոմեքենայով», «Մու-մու», «Չղջիկ» (հեռուստաֆիլմ) և այլ կինոնկարներում: ՌԴ Պետ. մրց. (1994):

ՄԱԿՍԱԿՈՎԱ Մարիա Պետրովնա (1902–1974), ռուս. երգչուհի (մեցցո-սոպրանո): ՌԽՖՍՀ (1951), ԽՍՀՄ (1971) ժող. արտիստ: Լ. *Մակաակովայի* մայրը: 1923–53-ին՝ Մոսկվայի

Մեծ թատրոնի մեներգչուհի (Կարմեն՝ Ժ. Բիզեի «Կարմեն», Ալմաստ՝ Ա. Սպենդիարյանի «Ալմաստ», Մարֆա՝ Մ. Պ. Մուսորգսկու «Բորիս Գոդունով», ևն): Հանդես է եկել նաև համերգներով:

ԽՍՀՄ Պետ. (1946, 1949, 1951), Ռ. Շումանի անվ. (1972, ԳԴեմՀ) մրց-ներ:

ՄԱԿՐՈ... (հուն.՝ makros – մեծ, երկար), բարդ բառերի սկզբնամաս. ցույց է տալիս որևէ օբյեկտի խոշոր չափերը (օր.՝ մակրոաշխարհ, մակրոկառուցվածք, ***մակրոկլիմա, մակրոէկոնոմիկա*** ևն):

ՄԱԿՐՈԷԿՈՆՈՄԻԿԱ, տնտեսագիտ-յան բաժին, որն ընդհանրացնող ցուցանիշների (ՀՆԱ, ՀԱԱ, ազգ. եկամուտ, դրամաշրջանառություն, զբաղվածություն, տոկոսադրույքներ, պետ. ծախսեր, ներդրումներ ու սպառում) օգնությամբ տնտ-յունն ուսումնասիրում է որպես ամբողջություն:

ՄԱԿՐՈԷՐԳԻԿ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ (< ***մակրո***... և հուն.՝ ergon – գործունեություն, աշխատանք), կենդանի բջիջների օրգ. միացություններ, որոնք պարունակում են էներգիայով հարուստ կամ մակրոէրգիկ կապեր: Գոյանում են լուսասինթեզի, քեմոսինթեզի և կենսբ. օքսիդացման արդյունքում: Մ. մ. են ԱԵՖ-ն ու այլ նյութեր, որոնց քայքայումն ուղեկցվում է ազատ էներգիայի անջատմամբ:

ՄԱԿՐՈԿԻՆԵՏԻԿԱ, **մակրոսկոպիկ կինետիկա**, ուսումնասիրում է քիմ. ռեակցիաների կինետիկ. օրինաչափությունները, որոնք ուղեկցվում են համակարգում միաժամանակ տեղի ունեցող դիֆուզիայի, ջերմության, էլ. լիցքի փոխանցման և այլ շարժընթացներով: Մ-ի հիման վրա մշակվել են գործնականորեն կարևոր մի շարք երևույթների (այրում, լուծում, էլեկտրաքիմ. և այլ շարժընթացներ) տեսություններ:

ՄԱԿՐՈԿԼԻՄԱ (< ***մակրո***... և ***կլիմա***), խոշոր տարածաշրջանների՝ բնական զոնաների, մայրցամաքների և օվկ-ների կամ ամբողջ Երկիր մոլորակի կլիման: Բավականաչափ միատարր է իր աշխարհագր. գործոններով և բնորոշվում է մթն-ի ընդհ. շրջանառությամբ: Համեմատաբար ոչ մեծ տարածքների կլիման բնութագրվում է որպես մեզոկլիմա, փոքր տարածքներինը՝ միկրոկլիմա:

ՄԱԿՐՈՄՈԼԵԿՈՒԼ, ***պոլիմերի*** մոլ.: Կառուցված է միանման կամ տարբեր կրկնվող օղակներից (ատոմների խումբ), որոնք կազմում են շղթա: Պարունակում է մեծ թվով (10^2–10^6) ատոմներ, որոնք միացած են քիմ. կապերով: Ունակ է փոխելու ձևը՝ ջերմ. շարժման կամ ազդող արտաքին ուժերի ազդեցությամբ (Մ-ի ճկունություն): Ընթացքի իրական պայմաններում մակրոկինետիկ. օրինաչափությունների իմացությունը հատկապես կարևոր է այրման հետերոգեն կատալիզի և այլ շարժընթացների համար:

ՄԱԿՐՈՅԻՍՏԻՍ, գորշ ջրիմուռների ցեղ: Թալոմի (մարմնի) երկ. մինչև 60 *մ* է (զանգվածը՝ մինչև 150 *կգ*)՝ տերևանման թիթեղներով (ամենախոշոր ջրիմուռներն են): Հայտնի է 3 տեսակ՝ բարեխառն գոտիների ծովերում: Պարունակում են ալգինաթթուներ, որոնք օգտագործում են արհեստ. մանրաթել ստանալու համար:

ՄԱԿՐՈՖԱԳԵՐ, **պոլիբլաստներ**, մարդու և կենդանիների օրգանիզմի մեզենքիմային բջիջներ, որոնք ունակ են ակտիվորեն բռնել ու մարսել (տես ***Ֆագոցիտոզ***) բակտերիաները, բջիջների մնացորդները, նաև օրգանիզմի համար օտարածին կամ թունավոր այլ մասնիկներ: Մ. են արյան մոնոցիտները, շարակցական հյուսվածքի հիստիոցիտները ևն:

ՄԱԿՐՈՒՐՈՒՄՆԵՐ (Macrurus), **երկարապոչներ**, ձողաձուկազգիների կարգի ծով. ձկների ընտանիք: Մարմինը երկարացած է՝ 20 *սմ*–1,5 *մ* (հետին ծայրը վերածվում է թելի): Հայտնի է 300 տեսակ՝ Արկտիկայից մինչև Անտարկտիդա: Արդյունագործ. ձուկ է:

ՄԱԿՈՒԻ, **Ջենգիմար**, գետ Հայկ. լ-աշխարհում, Արաքսի աջ վտակը: Երկ.՝ մոտ 125 *կմ*: Սկիզբ է առնում Կոտուր լ-շղթայի արլ. լանջերից՝ մոտ 3000 *մ* բարձր-ից: Վերին հոսանքում հոսում է V-ձև հովիտներով, ստորին հոսանքում՝ հարթավայրով՝ առաջացնելով գետագալարներ: Մնումը խառն է: Հորդանում է մարտի վերջին, վարարում աշնանը: Մ-ի ափին է Մակու բերդը:

ՄԱԿՈՒԻ, բք Վասպուրական նահանգ-ի Արտազ գվծ-ում: Հին շրջանում կոչվել է Շավարշան կամ Շավարշական: Եղել է Արտազի հայկ. իշխանության նստավայրը: XVIII դ-ի 1-ին կեսից՝ խանության կենտրոն: XX դ-ի սկզբին ունեցել է 240 տուն (1400 մարդ) հայ բնակիչ, որոնց մեծ մասը զոհվել է 1918-ի թուրք. զորքի ներխուժման ժամանակ: Այժմ Իրանի կազմում է (Արմ. Ադրբեջան): Բն.՝ 47,115 հգ., հիմնականում՝ ադրբեջանցիներ, կան նաև քրդեր և հայեր:

ՄԱԿՈՒԻԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, **Արտազի հայկական իշխանություն**, վարչաքաղ. կազմավորում միջնադար. Հայաստանում՝ Վասպուրական նահանգ-ի Արտազ գվո-ում: Մ. ի. է կոչվել իշխանանիստ Մակու բք-ի անունով: Ստեղծվել է XIII դ-ի կեսին, երբ, օգտվելով Կիլիկիայի հայկ. և մոնղ. պետության դաշնագրի (1254) ընձեռած հնարավորություններից, Արտազի եպիսկոպոս. տոհմն իր ձեռքում է կենտրոնացրել գվո-ի նաև աշխարհիկ իշխանությունը: XIV դ-ի վերջին ընդունել է ***Լանկ Թամուրի*** գերիշխանությունը: Վերացվել է 1426-ին:

ՄԱԿ-ՔԱԼԼՈՒ (McCulloch) Ուորեն (1898–1969), ամերիկացի նյարդաֆիզիոլոգ, նյարդահոգեբան, արհեստ. նյարդացանցի տեսաբան և կիբեռնետիկայի հիմնադիրներից: Աշխ-ները վերաբերում են նյարդատեխնոլոգիայի, մաթ. մոդելավորման հարցերին: Ներմուծել է (Ու. Փիտսի հետ) «ֆորմալ նեյրոն» հասկացությունը:

ՄԱԿ-ՔԱԼԼՈՒՖ (McCullough) Քոլին (1937–2015), ավստրալիացի կին գրող: Ճանաչվել է «Մացառուտում երգողները» (1977) սիրավեպով: Հեղինակ է նաև «Երրորդ հազարամյակի հավատի խորհրդանիշը» (1985), «Սիրելի հրեշտակ» (2004), «Միս Մերի Բենեթի անկախությունը» (2008), «Դառն ուրախություն» (2013) և այլ վեպերի, «Հռոմի տիրակալները» (1990–2007) պատմավիպաշարի:

ՄԱԿ-ՔԱՐԹԻ (McCarthy) Ջոն (1927–2011), հաշվող. տեխնիկայի բնագավառի ամերիկացի գիտնական, «արհեստական բանականության հայրը»: Աշխ-ները վերաբերում են ԷՀՄ-ների տեսությանը, մաթ. տրամաբ-յանը, ծրագրավորման LISP ալգորիթմ. լեզվի ստեղծմանը:

ՄԱԿ-ՔԱՐԹՆԻ (McCartney) Փոլ (ծ. 1942), անգլիացի երգիչ, կիթառահար, կոմպոզիտոր: «*Բիթլզ*»-ի անդամներից, որի համար գրել է բազմաթիվ երգեր (նաև Ջ. Լենոնի հետ): 1971–81-ին՝ «Wings» խմբի հիմնադիր-ղեկ. (1971): Հեղինակ է երգերի, «Լիվերպուլյան օրատորիա»-ի (1990), կինոերաժշտության («Ընտանիքի ուղին», «Ողջույն ըստ Բրոդ-ստրիթի», «Վանիլային երկինք» ևն):

ՄԱԿ-ՔԵՆԶԻ (Mackenzie) Ալեքսանդեր (1764–1820), շոտլանդացի առևտրական և ճանապարհորդ: 1789-ին Ստրկական գետի հոսանքով իջել է մինչև Մեծ Ստրկական լիճը, հայտնագործել է Մ. (կոչվել է իր անունով) գետը, Մ. և Ֆրանկլին լ-ները: 1792–93-ին հատել է Հս. Ամերիկան արլ-ից արմ., 1793–94-ին՝ հակառակ ուղղությամբ:

ՄԱԿՔԵՆԶԻ Ջեյմս (1853–1925), անգլիացի թերապևտ: Սրտաբանության հիմնադիրներից: Կազմակերպել և ղեկավարել է Սենտ-Անդուսի կլինիկ. հետազոտությունների ինստ-ը (Շոտլանդիա, 1918):

ՄԱԿՔԵՆԶԻ, գետ Կանադայի հս-արմ-ում: Բուն Մ-ի երկ.՝ մոտ 1600 *կմ* (Փիսի հետ՝ 4250 *կմ*), ավազանը՝ 1804 հգ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 11 հգ. *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Մեծ Ստրկական լճից, հոսում Մակքենզիի դաշտավայրով, առաջացնելով դելտա (12 հգ. *կմ*^{2})՝ թափվում է Հս. սառուցյալ օվկ-ի Բոֆորտի ծովը: Նավարկելի է ցանցի 2200 *կմ*-ը: Մ-ի ափերին են Ակլավիկ, Ինուվիկ, Նորման Ուելս և այլ բ-ներ: Հայտնաբերել և առաջին անգամ նրանով անցել է Ա. *Մակքենզին* 1789-ին:

ՄԱԿ-ՔԻՆԼԻ (McKinley) Ուիլյամ (1843–1901), ԱՄՆ-ի 25-րդ նախագահը՝ 1897–1901-ին: Կոնգրեսի անդամ՝ 1877-ից: Նրա նախաձեռնությամբ ընդունվել է մաքս. տարիֆի բարձրացման օրենքը (այսպես կոչված՝ Մ-Ք-ի տարիֆ 1890): Մ-Ք-ի կառ-յունը սանձազերծել է 1898-ի ***Իսպանա-ամերիկյան պատերազմը***, Չինաստանում հռչակել (1899) «բաց դռների» քաղ-յուն: Սպանել են անարխիստները:

ՄԱԿ-ՔԻՆԼԻ, Հս. Ամերիկայի ամենաբարձր լ-գագաթն Ալյասկայի լ-շղթայում: Բարձր.՝ 6193 *մ*: 1300–1500 *մ*-ից բարձր ծածկված է ձյունով ու սառցադաշտերով: Գործում է Ազգ. պարկ (Դենալի):

ՄԱԿ-ԼԻՆՏՈՒԿ (McClintock) Բարբարա (1902–1992), ամերիկացի բջջագենետիկ: Աշխ-ները վերաբերում են ***կրոսինգովերի*** մեխանիզմի բջջաբան. հիմնավորմանը (1933), եգիպտացորենի գենոմում միգրացվող տարրերի (շարժուն գեներ) հայտնաբերմանը (1950-ական թթ.): Նոբելյան մրց. (1983):

ՄԱԿ-ՖԱԴԵՆ (McFadden) Դենիել (ծ. 1937), ամերիկացի տնտեսագետ: Աշխ-ները վերաբերում են մակրովերլուծությանը, ժողովրդագրությանը, պահանջարկին, մոդելավորման մեթոդներին, ընտրության տեսությանը: Նոբելյան մրց. (2000):

ՄԱԿՖԵՐՍՈՆ (Macpherson) Ջեյմս (1736–1796), շոտլանդացի գրող: Աշակել է կելտ. ավանդույթներն ու լեգենդները և ներկայացրել դրանք որպես լեգենդար զինվոր ու բարդ Օսսիանի ստեղծագործություններ: Հեղինակ է «Ֆինգալի որդու՝ Օսսիանի ստեղծագործությունները» (1765) ժող-ի, որը նախառոմանտիզմի դաս. օրինակներից է:

ՄԱՀ, օրգանիզմի կենսագործունեության ընդհատում, բջիջներում և հյուսվածքներում կենսընթացների անվերադարձ կանգ, բոլոր կենդանի էակների գոյության անխուսափելի բնական վախճանը:

Միաբջիջ օրգանիզմների (օր.՝ նախակեն-դանիների) Մ. ընթանում է կիսման ձևով, որը հանգեցնում է տվյալ առանձնյակի գոյության ընդհատման և նրա փոխա-րեն 2 նորերի առաջացման: Մարդու և տաքարյուն կենդանիների Մ. կապված է ամենից առաջ շնչառության և արյան շրջանառության ընդհատման հետ:

«ՄԱՀԱԲՀԱՐԱԹԱ», Հնդկաստանի ժողդ-ների էպոսը, հինհնդ. գրկ-յան 2 մեծ պոեմներից (մյուսը՝ «Ռամայանա»)՝ բաղկացած 18 գրքից, որտեղ ամփոփված են լեգենդներ, առակներ, առասպելներ, ողբեր ևն: Սկզբնավորվել է մ. թ. ա. II հզ-ամյակի 2-րդ կեսին: Այժմյան տեսքն ստացել է մ. թ. I հզ-ամյակի կեսին: «Մ.»-ում պատմվում է Բհարաթա թագավորի ժառանգների մասին:

ՄԱՀԱԹՄԱ (սանսկրիտ՝ հզոր հոգի), 1. տիտղոս Հնդկաստանում. բնորոշում է հոգևոր կատարելագործման բարձրա-գույն աստիճանի հասած և գերբնական կարողությունների տեր յոգերին (երբեմն՝ աստվածների մականուն): Մ. են անվա-նում նաև ազգի հոգևոր առաջնորդներին: 2. *Թեոսոֆիայում*՝ իմաստության ուսու-ցիչներ, որոնք հասել են նիրվանային և հրաժարվել նրանից՝ մարդկության հոգևոր կատարելագործմանը նպաս-տելու համար: Ապրում են Հիմալայ-ներում (Շամբալայ): Հաղորդակցվում են թեոսոֆիայի ադեպտների հետ: 3. Հնդիկ հաս-քաղ. գործիչ, Հնդկաստա-նի անկախության շարժման առաջնորդ Մոհանդաս *Գանդիի* պատվանունը՝ Մա-հաթմա Գանդի (տվել է *Ռաբինդրանաթ Թագորը*):

ՄԱՀԱԼ (արաբ.՝ մահալ – վայր, տեղ բառի հոգնակին է, համապատասխանում է գվո-ին), XIV դ–XIX դ-ի սկզբին վտմ Իրանում և նրան ենթակա երկրներում, այդ թվում՝ *Արևելյան Հայաստանում*. այստեղ եղել է շուրջ 45 Մ.: Կառավարել է բեկի տիտղո-սով միրզոլուքը: Արցախի Գյուլիստան, Ջրաբերդ, Խաչեն, Դիզակ, Վարանդ Մ-ների միրզոլուքները հայ մելիքներն էին (տես *Խամսայի մելիքություններ*):

ՄԱՀԱՄՈՐՄ, տես *Շիկափակ*:

ՄԱՀԱՅԱՆԱ (սանսկրիտ՝ հզոր մարտա-կառք), ուղղություն բուդդայականության մեջ, ժամանակ. առումով՝ երկրորդը: Զևա-վորվել է մ. թ. սկզբին Հնդկաստանում: Տարածվել է Չինաստանում, Վիետնամում, Կորեայում, Ճապոնիայում: Մ-ի գիտա-կարգում առաջնային են կարեկցանքը (կարունա) և բոլոր կենդանի էակների հանդեպ բարեհաճությունը (մայտրի), որն արտացոլվել է երկնային (պայծառացած էակներ) և երկրային (վանականներ և հավատացյալ-միրանյաներ), բոթհիսատ-վաների մասին ուսմունքներում:

ՄԱՀԱՊԱՏԻԺ, դատապարտվածին պատ-ժելու ձև՝ մահվան ենթարկելու միջոցով: Երկրների մեծ մասում Մ. չի կիրառվում, որոշ երկրներում կիրառվում է առան-ձնապես ծանր հանցագործությունների դեպքերում, Չինաստանում՝ նաև կաշա-ռակերության, կավատության, դրամա-նենգության համար: Առավել տարածված մահապատժի տեսակ է գնդակահա-րությունը, կիրառում են նաև էլ. աթոռը, կախաղանը, քարկոծումը ևն: ՀՀ-ում Մ. չեղյալ է հայտարարվել 2003-ի ապրիլից, թեև 1997-ից այն փաստացի չի կիրառվել: Քր. նոր օրենսգրքով՝ Մ. փոխարինվել է ցմահ ազատազրկումով:

ՄԱՀԱՌԱՋԱ (սանսկրիտ – բառացի՝ մեծ կառավարիչ), իշխան. տիտղոս Հնդկաս-տանում: 1956-ին Մ. և այլ տիտղոսակիր իշ-խանները զրկվել են քաղ. իշխանությունից:

ՄԱՀԱՐԱՇՏՐԱ, նահանգ Հնդկաստանում՝ Հինդուստան թ–կղզու հս–արմ–ում: Տա-րածքը՝ 307,7 հզ. *կմ*^{2}, բն.՝ 112,3 մլն (2011): Վարչ. կենտրոնը՝ *Մումբայ*:

ՄԱՀԱՐԻ (Ահեմյան) Գուրգեն Գրիգո-րի (1903–1969), գրող: ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1965): 1936-ին անհիմն բռնադատվել է և աքսորվել (մինչև 1947-ը, 2-րդ անգամ՝ 1949–54-ին) Սիբիր: Հեղինակ է «Մանկություն», «Պատանե-կություն» (երկուսն էլ՝ 1930), «Երիտա-սարդության սեմին» (1956) կենսագր. եռերգության, «Այրվող այգեստաններ» (1966) վեպի, որտեղ պատկերել է Վա-նի հայության կյանքն ԱՀՊ-ից (1914–18) առաջ և Մեծ եղեռնի սարսափները, տեղահանությունն ու գաղթը: «Ծաղկած փշալարեր» (հրտ.՝ 1988) վավերագր. վիպակում ներկայացրել է խորհրդ. իշ-խանության տարիներին բռնադատված մարդկանց կյանքը սիբիրյան ճամբարնե-րում: Հեղինակ է նաև «Ընձաններ» (1959) և այլ բանաստեղծությունների, «Լռութ-յան ձայնը» (1962) և այլ պատմվածքների ժող-ների, «Չարենց–Նամե» (1968), «Այս հմուտ, հանճարեղ լոռեցին» (հրտ.՝ 1971) դիմանկար-հուշագրությունների, նաև բալլադների, պոեմների և այլ գործերի:

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1972):

ՄԱՀԱՐՋԱՆ, քանդ. ստեղծագործութ-յուն կամ ճարտ. փոքր հորինվածք, որը դրվում է մահացածի գերեզմանին: Հին և միջնադար. Հայաստանում Մ-ներ են եղել *մենհիրները*, *կոթողները*, *դամբարանները*, *խաչքարերը*, *տապանաքարերը*, XVIII դ-ի վերջից՝ *հուշարձանները*:

ՄԱՀԱՅՈՒ ԹՌԻՉՔ, *սալտո–մորտալե* (< իտալ. salto – թռիչք, mortale – մահացու), *մարմնամարզության* մեջ և *ակրոբատի-կայում*՝ թռիչքի ժամանակ լրիվ պտույտ (առաջ կամ հետ) կատարելը իր առանցքի շուրջը: Տեսակներն են՝ թափավազքից, տեղից, դարձումներով, առաջ, հետ, կողմ, կրկնակի, եռակի, տարբեր դարձումնե-րով և այլ Մ. թ-ներ:

ՄԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, *լետալություն*, բժշկ. վիճակագրության ցուցանիշ. բնութա-գրում է ազգաբնակչության վիճակը. 1 հզ. բնակչի հաշվով մահացողների թիվն է 1 տարում: ՀՀ-ում միջին Մ. 2005–10-ին կազմել է 43,1, մանկ. Մ.՝ 21:

ՄԱՀԵ (Mahé) Ժան–Պիեռ Անրի Մարի (ծ. 1944), ֆրանսիացի լեզվաբան, արևելա-գետ, հայագետ: Պրոֆ. (1978): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (1990): 1977-ից՝ «Ռևյու դեզ էթյուդ Արմենիեն» հանդեսի գլխ. խմբ.: 1989-ից՝ Սորբոնի բարձրագույն ուսմանց դպրոցի IV բաժանմունքի տնօրեն: Հեղի-նակ է «Հերմեայ Եռամեծի առ Ասկղեպիոս սահմանքի» (թարգմ.՝ գրաբարից ֆրանս., 1976), «Հերմես Եռամեծի «Սահմանքի» փիլիսոփայական նշանակության մա-սին» (1985), «Գրիգոր Նարեկացին և իր «Մատեան ողբերգութեան» երկը» (հա-մահեղ., 2004), «Հայաստանը՝ դարերի ապացույց» (2005), «Հայաստանի պատ-մություն» (2012, վերջին երկուսը՝ ֆրանս., ևն) աշխ-ների, նաև «Լարուս» ֆրանս. հանրագիտարանի՝ հայ գրկ-յանը վերա-բերող հոդվածների:

ՄԱՀԵՎԱՆՅԱՆՆԵՐ, իշխան. տոհմ Սյու-նիքում: 1166-ին սելջուկների հարձակում-ների պատճառով տեղափոխվել են Անի: Սյունիք են վերադարձել *Զաքարյանների* օրոք, ստացել Նրբույն բերդը և ագարակ-ներ՝ Վայոց ձորի արմ. կողմում: Մ–ի վեր-ջին ներկայացուցիչներից էին Զուրջանց թոռ Սահևանը և Ամիրան:

ՄԱՀԼԵՐ (Mahler), **Մալեր**, Գուստավ (1860–1911), ավստրիացի հրեա կոմպո-զիտոր, դիրիժոր, օպեր. ռեժ.: 1909-ից՝ Նյու Յորքի ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխ. դիրիժոր: Հեղինակ է 10 սիմֆոնիայի (1888–1910, վերջինը՝ անավարտ), երգա-շարերի («Անկան կախարդական եղջյու-րը», 1892–98, «Թափառական ենթավար-պետի երգերը», 1883–85, ևն), նաև «Ասք երկրի մասին» (1909) մեներգիչների և նվագախմբի համար ստեղծագործության:

ՄԱՀԿԱՆԱԲԵՐԴ, բերդ *Գուգարք*՝ նահանգ-ի Ձորափոր (Կայան) գվո-ում՝ Աղստևի մի-ջին հոսանքի ավազանում՝ Դեղձնուտ վանքի մոտակայքում (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզում): Հիմնադրվել է XII դ-ում բարձ-րադիր ժայռի գագաթին՝ խիտ անտա-ռում: XII–XIII դդ-ում պատկանել է Մ-ի Արծրունիներին (տես *Սահկանաբերդի իշխանություն*): Պարիսպները համեմա-տաբար լավ են պահպանվել: Այժմ կոչ-վում է Բերդաքար:

ՄԱՀԿԱՆԱԲԵՐԴԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, XII–XIII դդ–ում Հս. Հայաստանում ավա-տատիր. իշխանատուն՝ Արծրունի տոհմից սերած իշխանների գլխավորությամբ: XII դ-ի կեսին հաստատվել են *Կայան* գվո-ում: Կենտրոններն էին *Կայան* ամրոցը և *Սահկանաբերդը*: Հիմնադիրը Վահրամ Արծրունին էր՝ Ամիր Քուրդ Արծրունու հայրը: Մահկանաբերդի ավատ. տան վերջին խոշոր ներկայացուցիչներն էին *Սադուն Բ Արծրունին* և նրա որդի *Խութ-լու Բուղան*: Մ. ի. քայքայվել է XIV դ-ում՝ մոնղ. տիրապետության օրոք:

ՄԱՀՄԵԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, իսլամ (արաբ.՝ հնազանդություն, Աստծուն նվիրվածություն), հետևորդների թվով առավել տարածված համաշխ. կրոններ-ից: Մ. *քրիստոնեության* և *հուդայակա-նության* հետ դասվում է աբրահամ. կրոն-ների շարքը: Հիմնադիրը *Մուհամմեդն* է (այստեղից էլ՝ անվանումը). որը ստեղծել է հետևորդների 1-ին համայնքն Արաբիա-յում VII դ–ում: Գլխ. սրբազան գիրքը *Ղու-րանն* է: Դավանաբանության, իրավունքի և կրոն. ծիսակատարությունների 2-րդ կարևոր գիրքը *Սուննան* է: Մ. մեծ ազ-դեցություն է կրել քրիստոնեությունից և հուդայականությունից: Հիմն. դոգմաներն են միակ Աստծու (Ալլահ) երկրպագությու-նը և Մուհամմեդի պաշտամունքը որպես նրա մարգարեի: Հիմն. ուղղություններն են *սուննիականությունը* և *շիականութ-յունը*: Մահմեդականները հավատում են հոգու անմահությանը, հրեշտակներին և ահեղ դատաստանին:

VIII–XIII դդ–ում Մ-յան մեջ ձևավորվել է տես–աստվածաբան. (*ղալամ*) համակարգ: XI դ–ում ընդհանուր գծերով ձևավորվել է սկզբունքների, իրավ. և վարքի նորմերի համալիր, որն ընկալվում է որպես մահ-մեդ. կյանքի կենսակերպ (*շարիաթ*): VIII–XI դդ–ում Մ-յան մեջ ձևավորվել է խորհրդա-պաշտ. ուղղություն՝ *սուֆիականությունը*, որի շրջանակներում հետագայում ձևա-վորվել է կրոն. եղբայրությունը (թարի-կատներ): Մի շարք երկրներում, որտեղ մահմեդ. բնակչությունը մեծամասնություն է կազմում, Մ. ճանաչվել է պետ. կրոն:

ՄԱՀՄՈՒԴ ԱԲԲԱՍ, Աբու Մազեն (ծ. 1935), պաղեստինցի արաբ քաղ. գործիչ, *Պաղեստինի* (մասամբ ճանաչված) նախագահը՝ 2013–ից: 2005–13-ի հունվ. 5-ին՝ Պաղեստինի ազգ. վարչակազմի քարտուղար:

ՄԱՀՄՈՒԴ ՂԱԶՆԵՎԻ (970–1030), *Ղազնևիների* պետության տիրակալ՝ 998–ից: Նրա օրոք պետությունը հասել է հզորության գագաթնակետին: 17 արշավանք է կատարել Հս. Հնդկաստան, պատերազմել է Միջին Ասիայում:

ՄԱՀՄՈՒԴ ՔԱՇՂԱՐԻ (1028/29–1101/26), միջինասիացի գիտնական-բանասեր: Նրա «Թյուրքերենի բարբառների բառարան»-ը (1072–74), որտեղ դասակարգված են թյուրք. լեզուները, թյուրք. բարբառագիտ-յան հնագույն հուշարձաններից է: Պարունակում է բազմաթիվ գր. նմուշներ, Միջին Ասիայի, Արլ. Թուրքմենստանի, Պովոլժիեի թյուրք. ժողղ-ների մասին պատմամշակութ., ազգագր. և աշխարհագր. տեղեկություններ:

ՄԱՀՏԵՍԻ ՄՈՒՐԱՏ (Շահմուրատ) **ԲԱՂԻՇԵՑԻ** (ծ. թ. անհտ–1684), խոջա, հայ ազգ-ազատագր. շարժման գործիչ: 1666–83-ին Փարիզում քանիցս հանդիպել է Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XIV-ին, ներկայացրել Օսմ. կայսրության քրիստոնյա ժողղ-ների համատեղ ապստամբության, Հայաստանի և Արլ. հռոմ. կայսրության վերականգնման ծրագիրը: Պահպանվել է Մ. Մ Բ-ու 1672-ի ուղերձը Լյուդովիկոս XIV-ին, որի հիշատակարանում (1683-ի փետր.) նկարագրված է *Վերապը*:

ՄԱՀՏԵՍՅԱՆ Մանուկ (Էմանուել) Ակոբջանի (1857–1908), նկարիչ: Հովհաննես *Այվազովսկու* հետևորդներից: Աշխատել է Հովհաննես Այվազովսկու արվեստանոցում (1892–ից), ապա հաստատվել Սիմֆերոպոլում: Գործերին բնորոշ են բնության, տարերքի, ծովային ազատ տարածության հավաստի պատկերումը, գունապատկեր. ընդհանրականությունը («Փրկության սպասողները», «Փոթորիկ ծովի վրա», «Առավոտ», «Պուշկինի ժայռը», «Առագաստանավն անհանգիստ ծովում» ևն): Ս. Պետերբուրգի Գեղարվ-ի ակադ-ի «ոչ դասական նկարիչ» (1892):

ՄԱՀՏԵՍՅԱՆ Յոլակ Ծաղոյի (1928–2008), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (1976), պրոֆ. (1977): Աշխ-ները վերաբերում են ՀՀ հաս. ամբողջ. արդյունքի և ազգ. եկամտի արտադր-յան ու օգտագործման խնդիրներին:

ՄԱՀՈՒԲԻ Գևորգ (Մանուկյան Գևորգ Մանուկի, 1857–1935), աշուղ: Գրել է աշուղ. արվ-ի գրեթե բոլոր ժանրերով («Անցավոր աշխարհի», «Հայրենիք», «Աշխարհս երազ է» ևն): Հրատարակվել են Մ-ի «Մահուբի Գեւորգի գլխի անցքերը եւ խրատական երգերը» (1912, կազմ.՝ Ե. Խաչատրյան), «Ջութակ» (1957, կազմ.՝ Ա. Սահակյան) ժող-ներ:

ՄԱՀՈՒԴ, բրդե կամ կիսաբրդե մանվածքից գործվածք, որի արտաքին մակերևույթը պատված է թելերի միահյուսումների նախշանկարը քողարկող թաղիքանման ծածկոցով:

ՄԱՀՃՈՒՋ Նաջիբ (1911–2006), եգիպտացի գրող: Հեղինակ է «Նոր Կահիրե» (1945), «Ալ-Միդակ նրբանցքը» (1947) սոցիալ-քննադատ. և այլ վեպերի, XX դ-ի եգիպտ. ընտանիքի կյանքի մասին «Բեյն ալ-Կասրեյն» (1956–57), «Գողը և շները» (1961) եռերգությունների, «Հայելիներ» (1971–72) ինքնակենսագր. վեպի, «Խելագարության շշունջը» (1938), «Ապաքինման շրջանի երազները» (2004) պատմվածքների ժող-ների և այլ գործերի: Հայ. հրատարակվել են «Ռադոբիս» (2015) վեպը, «Քաղցր կին» (ա. թ.) գործը: Նորելյան մրց. (1988):

ՄԱՃՈՆԻ (Mazzoni) Անջոլո (1894–1979), իտալացի ճարտ.: Հեղինակ է «Օդային ճարտարապետության ֆուտուրիստական մանիֆեստի» (1934, Ֆ. S. Մարինետտիի հետ):

ՄԱՂԱԴԱՆՈՍ (Petroselínum), նեխուրազգիների (հովանոցավորներ) ընտանիքի միամյա կամ երկամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 4, մշակության մեջ՝ 1 տեսակ՝ մշակովի Մ., որն ունի արմատապտղային և տերևային տարատեսակներ: Մշակում են բոլոր մայրցամաքներում, ՀՀ-ում՝ տերևայինը: Բերքատվությունը՝ 270–300 *գ/հա*:

ՄԱՂԱԼԱՇՎԻԼԻ (Մաղալյան) Սերգեյ Մովսեսի (1938–2016), բասկետբոլիստ: ԽՍՀՄ չեմպիոն (1968), գավաթակիր (1969): Խաղացել է Թբիլիսիի «Դինամո» բասկետբոլի թիմում: 1967–68-ին հանդես է եկել ԽՍՀՄ բասկետբոլի հավաքականի կազմում: 1978–81-ին՝ Համամիութ. կարգի մրցավար:

ՄԱՂԱԼՅԱՆ Սերգեյ Սերգեյի (ծ. 1948), դերասան: ՀՀ վաստ. արտիստ (2005): 1982–ից՝ Երևանի Կ. Ս. Ստանիսլավսկու անվ. ռուս. թատրոնի դերասան (Ֆամուսով՝ Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս», Միկիչ Կոտրյանց՝ Ա. Ցագարելու «Խանութա», Պարոն՝ Ռ. Կալինոսկու «Լուսնային հրեշ», Օսեփ՝ Գ. Սունդուկյանի «Քանդած օջախ», Վասիլ՝ Լ. Շանթի «Կայսր», ևն):

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2003), ՀԹԳՄ «Արտավազդ» մրց. (2007):

ՄԱՂԱԼՅԱՆ Վլադիմիր (Վահան) Սարգսի (ծ. 1942), լրագրող, խմբ., բանաստեղծ: Բանասիր. գիտ. թեկնածու (1988): 1971–2006-ին՝ «Երևանի համալսարան» թերթի, միաժամանակ, 1992–2001-ին՝ «Հանդես Երևանի համալսարանի» պարբ-ի գլխ. խմբ.: 1981-ից՝ ԵՊՀ-ի «Գրական համալսարան» գր-գեղ. տարեգրքի հիմնադիր-խմբ.: Հեղինակ է «Դաղեթ-Խաչեն» (1999), «Գրական-մշակութային կյանքը Երևանի համալսարանում (1919–2009 թթ.)» (2010), «Հայ տեղական մամուլը և գրատպությունը Վրաստանում (1885–1990 թթ.)» (2012) աշխ-ների, բանաստեղծությունների ժող-ների: Կատարել է թարգմ-յուններ:

ԵՊՀ ոսկե մեդալ (1999, 2009):

ՄԱՂԱԼՈՎ (Մաղալյան) Ռուբեն Գրիգորի (1935–2016), ռազմ.գործիչ, գեն-լեյտ. (1983, գեն-մայոր՝ 1979): 1980–91-ին՝ Միջինասիական ՋՕ զորքերի գլխ. հրամ-ի տեղակալ, 1992–2000-ին՝ Հս. Կովկասի ՋՕ հրամ-ի խորհրդական, միաժամանակ՝ նույն տարածաշրջանի՝ ՀՄՊ-ի և քաղպաշտպ-յան ծառայության վետերանների խորհրդի նախագահ: ԽՍՀՄ Կարմիր աստղի, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 3-րդ աստիճանի շքանշաններ:

ՄԱՂԱՄԱԲԵՐԴ, *Մաղազբերդ*, ամրոց Այրարատ նահանգ-ի Շիրակ գավ-ում՝ Ախուրյանի արմ. ափին՝ ձորեզրի քառաժայռի վրա՝ Անիից 4 *կմ* հվ: Ըստ Շապուհ Բագրատունու՝ վերակառուցել է (VI դ–ի վերջ) Բյուզանդիայի կայսեր հայ կուսակալ Մաղաս իշխանը և կոչել իր անունով: Հաջորդաբար եղել է Կամսարականների, Բագրատունիների, Զաքարյանների ռազմ. հենակետերից: Մ-ի ներսում պահպանվել են շինությունների ավերակներ: Պարիսպները մեծ մասամբ կանգուն են:

ՄԱՂԱՔԻԱ ՂԲԻՄԵՑԻ (XIV դ–ի սկիզբ–1384), մշակույթի գործիչ, վրդ.: Հովանավորել, նաև դասավանդել է Սյունիքում՝ *Հովհան Որոտնեցու* և *Սարգիս Ապրակունեցու* տնօրինած դպրոցներում, որոնք պայքարել են ունիթորների դեմ:

ՄԱՂԱՔԻԱ ՃԵՎԱՀԻՐՃՅԱՆ, Մաղաքիա տիրացու Ճևահիրճի, XVII դ–ի վերջ–XVIII դ–ի սկզբի ժամանակագիր: Հայտնի է «Գաւազանագիրք կաթողիկոսացն հայոց» և «Ժամանակագրութիւն» (ներառում է 551–1707-ի տարեգրությունը) անտիպ երկերով:

ՄԱՂԱՔՅԱՆ Հարություն Կարապետի (1902–1954), երկրաբուսաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1938), պրոֆ. (1938): Յուրի *Մաղաքյանի* հայրը: ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1945): Կազմել է ՀՀ արոտավայրերի և խոտհարքների առաջին քարտեզը: Բացահայտել է ՀՀ բուսաշխարհին բնորոշ բույսերի նոր տեսակներ, հայտնաբերել գոճմակազգիների ընտանիքի նոր տեսակ (կոչվում է Ստելլերա Մաղաքյանի):

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի և «Պատվո նշան» շքանշաններ:

ՄԱՂԱՔՅԱՆ Հովհաննես (Իվան) Գևորգի (1914–1982), երկրաբան: Երկրբ-հնքբ. գիտ. դ-ր (1948), պրոֆ. (1949): ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1948, Երկրի մասին գիտ-յունների բաժանմունքի ակադ. քարտուղար՝ 1963–ից): ՀԽՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1961): 1963–66-ին՝ ՀԽՍՀ ԳԱ երկրբ. գիտ-յունների ինստ-ի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են մետաղածնության, մետաղային հանքավայրերի ու կազմավորումների, հանքաբանության, երկրաքիմ. ու միներալագրության հարցերին: Մ-ի մի շարք աշխ-ներ թարգմանվել են չին., անգլ. և այլ լեզուներով:

ԽՍՀՄ (1950), ՀԽՍՀ (1976) Պետ. մրցներ, ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի, Կարմիր աստղի, «Պատվո նշան» շքանշաններ:

ՄԱՂԱՔՅԱՆ (Թեոփիլյան, Մաղաք-Թեոփիլյանց) Մատթեոս (1767–1847), փիլ., բանասեր: ՎնտՄՄ անդամ: Ժխտել է անցյալի և իր ժամանակի առաջավոր գաղափարների ու մտածողների դերը մարդկային մտքի զարգացման պատմության մեջ: Ֆրանս-ից բաղվածաբար թարգմանել և հրատարակել է «Կենսագրութիւն երևելի արանց» (հ. 1–2, 1839) աշխ-ը, համալրել հայ պետ., քաղ. և մշակութ. գործիչներին նվիրված հոդվածներով: Լրացրել է Մ. Ձախջախյանի «Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական» (1837) բառարանը («Մ» տառից), կազմել օրացույցներ:

ՄԱՂԱՔՅԱՆ Յուրի Հարությունի (1929–2015), կենսաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1986), պրոֆ. (1987): Հարություն *Մաղաքյանի* որդին, Տիգրան *Մաղաքյանի* հայրը: Աշխ-ները վերաբերում են բջջի զարգացման մեխանիզմներին և տարբերակմանը: Հայտնաբերել է ԴՆԹ-ի գերինքնավերարտադրման (հիպերռեպլիկացիա) երևույթը: Մշակել է ԴՆԹ-ի քանակի որոշման նոր եղանակներ՝ ժամանակակից սարքավորումների կիրառմամբ:

ՌԲՆԳԱ անդամ (1998):

ՄԱՂԱՔՅԱՆ Պետրոս Ամբրոսիոսի (1826–1891), դերասան, ռեժ., թատեր. գործիչ: 1856–ից՝ Կ. Պոլսում Սրապիոն *Հեքիմյանի* թատերախմբի դերասան, 1861–76-ին՝ Արևելյան թատրոնի ռեժ. և դերասան (Բանտապետ՝ Ռոթայի «Երկու հիսնապետ», Սկապեն՝ Մոլիերի «Սկապենի

արաքքները», Տակոբեր՝ Է. Սյուի «Թափառական հրեա», ևն): 1869–ից գլխավորել է Արևելյան թատրոնը՝ իր շուրջը համախմբելով Պետրոս *Ադամյանին, Ապտիկիին,* Ազնիվ *Հրաչյային*, *Միրանուշին* և ուր.:

ՄԱՂԱՔՅԱՆ Տիգրան Յուրիի (ծ. 1953), աստղաֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (2001): Յուրի *Մաղաքյանի* որդին: «Արաս» տեղեկատվ. բյուլետենի հիմնադիր (1999), փոխնախագահ (2002–04): Աշխ–ները վերաբերում են աստղերի առաջացման և զարգացման վաղ փուլերին, միգամածությունների ֆիզիկային, աստղագիտ. դիտումների և դրանց արդյունք–ների վերլուծության եղանակներին:

ՄԱՂԴԱՍՅԱՆ Արկադի Արտեմի (1911–1978), կրկեսի արտիստ, ակրոբատ: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1965): Կրկեսում աշխատել է 1929–ից՝ «4 Ալվա» կրկես. կոլեկտիվում: 1933–56–ին (ընդհատումներով) հանդես է եկել ակրոբատ Կ. Յուգովի հետ: 1956–ից՝ Հայկ. կրկեսի արտիստ: Ակրոբատներ Ա. Մինասյանի, Մ. Մանուկյանի հետ ստեղծել է «Բրոնզե մարդիկ» խմբային համարը:

ՄԱՂԽԱԶՈՒԹՅՈՒՆ (ասոր.՝ malxazu – իշխան, տեր), արքունի գործակալություն Արշակունյաց Հայաստանում: Կատարել է արքունի պահակազորի և թագավորի թիկնապահ զորքի պարտականություն: Ժառանգաբար վարել է *Խորխոռունի–ների* նախարար. տոհմը, որի տանուտեր իշխանը եղել է թիկնազորի հրամ. և կրել «մաղխազ» տիտղոսը: Այդ պատճառով Խորխոռունիները կոչվել են նաև «Մաղխազունիք» կամ «Մաղխազյանք»:

ՄԱՃԱՌ, ըմպելիք, խաղողի՝ դեռևս գինու չվերածված, մասնակի խմորման ենթարկված քաղցու: Ունի կիսաքաղցր թթվաշ համ: Մ. օգտագործում են խմորումն սկսվելուց հետո, որի լրիվ ավարտից հետո դառնում է գինի: Հայաստանի խաղողագործ. շրջաններում Մ. հայտնի է վաղ շրջանից: Տես նաև *Գինեգործություն*:

ՄԱՃԱՎԱՐԻԱՆԻ Ալեքսեյ Դավիդի (1913–1995), վրացի կոմպոզիտոր: ՎԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1950), ԽՍՀՄ ժող. արտիստ (1958): Թբիլիսիի կոնսերվատորիայի պրոֆ. (1963): 1956–58–ին՝ Վրաստանի պետ. սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ., 1962–68–ին՝ Վրաստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահ: Հեղինակ է «Մայր և որդի» (1945), «Համլետ» (1967) օպերաների, «Օթելլո» (ըստ Վ. Շեքսպիրի, 1957), «Ընծեննավորը» (ըստ Շ. Ռուսթավելու, 1973) բալետների, «Հինգ մենախոսություն» վոկալ–սիմֆոնիկ շարքի (1968, ՎԽՍՀ Պետ. մրց.՝ 1971), սիմֆոնիաների և այլ գործերի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1951): Որդին՝ **Վախթանգ Մ.** (ծ. 1951), դիրիժոր: 1996–ից՝ Վրաստանի պետ. սիմֆ. նվագախմբի գլխ. դիրիժոր, 1998–ից՝ գեղ. ղեկ.:

«ՄԱՃԿԱԼ», գյուղաց. պարբերաթերթ (1922–31, Երևան): ՀԿ(բ)Կ ԿԿ հրտ–յուն: Խմբ–ներ՝ Եղիա Չուբար, Մարգո Չոլախյան, Հովհաննես Բաննահայան, Գառնիկ Ղազարյան, Էդվարդ Չոփուրյան, Աշոտ Հախումյան, Համո Հովհաննիսյան:

ՄԱՄԱՋԱՆՅԱՆ Աշոտ Պետրոսի (1908–1994), նկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (1965): Աշակերտել է Հակոբ *Կոջոյանին*: Հեղինակ է «Հին Երևանը» (1932–40, գունավոր լինոփորագրություն), «Վարդան Մամիկոնյան» (1943, վիմագրություն), «Սասունցի Դավիթ» (1973–75, օֆորտ), «Բյուրական» (1988, օֆորտ, նկարաշարեր) գործերի, նաև գրքերի ձևավորումների, նկարազարդումների և մատենանիշների:

ՄԱՄԱՍԱԽԼԻՍՈՎ Վահան Հովհաննեսի (1907–1972), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1943), պրոֆ. (1944): ՎԽՍՀ ԳԱ ակադ. (1960): ՎԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1966): Թբիլիսիի պետ. համալսարանի ֆիզիկայի ֆակ–ի հիմնադիրներից: Աշխ–ները վերաբերում են միջուկ. ֆիզիկայի հարցերին: Մշակել է ատոմի միջուկի կլաստերային մոդել:

ՄԱՄԲԱՆԵՐ (Dendroaspis), ասպիդների ընտանիքի թունավոր օձերի սեռ: Երկ.՝ 2–4 *մ*: Հայտնի է 5 տեսակ՝ Աֆրիկայում՝ Սահարայից հվ՝ խոնավ անտառներում: Մարդը մեկ կծածից կարող է մահանալ 0,5 *ժ*–վա ընթացքում:

ՄԱՄԲՐԵ ՎԵՐԾԱՆՈՂ, V դ–ի 2–րդ կեսի մեկնիչ, թարգմանիչ: *Մովսես Խորենացու* եղբայրը: Ըստ ավանդության՝ *Սահակ Ա Պարթևի* և *Մեսրոպ Մաշտոցի* աշակերտներից: Մ. Վ.–ից պահպանվել են 4 ճառ և «Դատումն քերդածաց» խորագրով մի գրվածք: Մ. Վ.–ի լեզուն հունաբան դպրոցի վաղ շրջանի հայ–ն է, մեկնաբանության եղանակը՝ այլաբան.: 1833–ին և 1894–ին Վենետիկում տպագրվել է Մ. Վ.–ի «Ճառք» ժող–ը:

ՄԱՄԵ (Մուսոյան) Ալիխանե (1948–2016), քուրդ բանաստեղծ, լրագրող, խմբ.: 1987–ից՝ *«Զագրոս»* թերթի հիմնադիր–խմբ.: Գրել է հայ. և քրդ.: Հեղինակ է բանաստեղծությունների, էսսեների, հարցազրույցների և հոդվածների ժող–ների, կազմել է քրդ–ի, քրդ. գրկ–յան դասագրքեր:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2012):

ՄԱՄԵՍՏԻԱ, Մսիա, Մոպսոս (հուն. Մոպսոս աստծո անունով), ք. Դաշտ. Կիլիկիայում՝ Ադանայից մոտ 25 *կմ* հս–արլ.՝ Պիրամոս (Ջահան) գետի աջ ափին: Մ. թ. ա. 80–70–ական թթ–ին Մ. առժամանակ անցել է Հայաստանին: X–XI դդ–ում հայերը կազմել են քաղաքի բնակչության գերակշռող տարրը, և Բյուզանդիան այն հանձնել է (XI դ–ի 1–ին կես) *Արքարիք Արծրունուն*: XII դ–ի 1–ին կեսին Ռուբինյանները հաղթել են խաչակիրներին, և Դաշտ. Կիլիկիան, Մ–ով հանդերձ, միավորվել է Կիլիկիայի հայկ. պետությանը:

ՄԱՄԵՍՏԻԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1152, Բյուզանդիայի (հրամ.՝ Ա. Կոմնենոս) և Կիլիկյան Հայաստանի զորաբանակների միջև, *Մսամեպտիա* ք–ի մոտ: Հայկ. բանակը *Թորոս Բ*–ի, նրա եղբայրներ *Ստեփանեի* ու *Մլեհի* հրամանատարությամբ պարտության է մատնել բյուզանդացիներին: Մ. ճ. վճռորոշ նշանակություն է ունեցել Կիլիկիայի իշխանապետության անկախությունը պահպանելու գործում:

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ Արշակ Սարգսի (1872–1937), դերասան: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1928): 1890–ից խաղացել է Թիֆլիսի հայկ., Եսայի *Փիթոևի* ռուս. թատրոններում: Հայաստանի Առաջին պետթատրոնի հիմնադիրներից (1922): 1929–ից՝ Թիֆլիսի հայկ. թատրոնի դերասան (Կակուլի, Գիժ Սոզի՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», «Քանդած օջախ», Լուկա՝ Մ. Գորկու «Հատակում», Ֆիգարո՝ Բոմարշեի «Սևիլյան սափրիչ», բեմ.՝ Մ–ի, ևն):

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ Բորիս Սամիկոնի (ծ. 1938), տեղեկատվ. համակարգերի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1997), պրոֆ. (2003): ՀՀ վաստ. ճարտարագետ (1983): Աշխ–ները վերաբերում են տեխնոլոգ. շարժընթացների հարաչափ. չափումներին և ինքնաշխատ չափիչ համակարգերի մշակմանը:

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ Լևոն Սանվելի (ծ. 1932), ջութակահար: Պրոֆ. (1978): ՀՀ վաստ. արտիստ (1973): Վարդան Լ. *Սամիկոնյանի* հայրը: 1963–76–ին՝ Հայհամերգի լար. քառյակում (1–ին ջութակ): 1993–ից՝ Ֆրանսիայում:

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ Հենրիկ Մկրտչի (ծ. 1935), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1998), պրոֆ. (2000): ՀԳԳԱ թղթ. անդամ (1999): Մ–ի ղեկավարությամբ մշակվել են ՀՀ գղտ. արտադրող. ուժերի զարգացման և տեղաբաշխման հայեցակարգեր ու սխեմաներ:

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ Հովհաննես Լևոնի (1907–1970), գրականագետ, խմբ.: Բանասիր. գիտ. դ–ր, պրոֆ. (1969): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1965): 1941–48–ին՝ «Սովետական Հայաստան» թերթի խմբ.: 1953–54–ին՝ ՀԽՍՀ ԳԱ գրկ–յան ինստ–ի տնօրեն: Հեղինակ է «Արտասահմանյան գրականության պատմություն» (1957), «Մարդը և նրա կերպարը գրականության մեջ» (1966), համահեղ.՝ «Արևմտյան Եվրոպայի գրականության պատմություն» (1934–36) աշխ–ների:

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ Մուշեղ Սանուկի (1904–1990), մարզ. գործիչ: ՀԽՍՀ վ. մ. (1961): ՀԽՍՀ ֆիզկուլտուրայի և ս. վ. գ. (1967): Աշխ–ները վերաբերում են հայկ. շարժուձևն մարզ. խաղերին, դպրոցականների ֆիզ. դաստիարակությանը:

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ Նիկողայոս Հովհաննեսի (1860–1937), արձակագիր, իրավաբան, բառարանագիր: Հեղինակ է «Հազարից մեկը» (1895), «Հիասութիւն» (1898) վեպերի, «Վիշապ» (1908) վիպակի, համահեղ.՝ «Ռուս–հայերէն երկաթուղային տերմինների բառարան»–ի (1925):

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ Ռաֆայել Սամիկոնի (ծ. 1939), տնտեսագետ: Տնտեսագիտ–յան դ–ր (1987): Աշխ–ները վերաբերում են կենցաղսպասարկման ոլորտի ձեռն–նեբի արտադր. ֆոնդերի օգտագործման արդյունավետության, կառավարման կատարելագործման ու ֆին. խնդիրներին:

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ Ռաֆայել Սամվելի (1927–1995), թերապևտ: Բժշկ. գիտ. դ–ր (1967), պրոֆ. (1969): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (1990): Հայաստանում նեֆրոլոգիայի հիմնադիրներից: Վարդան Ռ. *Սամիկոնյանի* հայրը: Մ–ի նախաձեռնությամբ «Էրեբունի» ԲԿ–ում հիմնադրվել է նեֆրոլոգ. կենտրոն (1988): Աշխ–ները վերաբերում են ներքին հիվանդություններին, հիմնականում՝ երիկամ. ախտաբանության հարցերին: 1994–95–ին՝ ՀՀ ԱՆ գլխ. նեֆրոլոգ:

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ Սերգեյ Վարդանի (1908–1987), միջուկ. սարքաշինության բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1970): Աշխ–ները վերաբերում են իոնացնող ճառագայթման և նյութի փոխազդեցության երևույթի օգտագործմամբ սարքերի, սարքավորումների ու համակարգերի մշակմանը, ստեղծմանը և ժողտնտ–յան մեջ ներդրմանը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1973), Լենինի, Կարմիր աստղի շքանշաններ:

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ Ստեփան (1859–1921), հրապարակախոս, խմբ., մշակույթի գործիչ: 1905–ին Մոսկվայում հրատարակել է «Չաս» և «Պարուս» (երկուսն էլ՝ ռուս.) թերթերը: ԱՀՊ–ի տարիներին՝ Մոսկվայի հայկ. կոմիտեի նախագահ. կոմիտեի աջակցությամբ Վ. Յ. Բրյուսովը

հրատարակել է «Հայ պոեզիան...» (1916) անթոլոգիան:

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ Վարդան Լևոնի (ծ. 1970), դաշնակահար: Լևոն ***Մամիկոնյանի*** որդին: Աշակերտել է Հ. Նեյհաուզին: 1991–ից՝ Ֆրանսիայում: Դաշնակահարների Բ. Դվարիոնասի անվ. (1–ին մրց., 1981, Վիլնյա), Ի. Լֆերյուրի անվ. (Մեծ մրց., Փարիզ, 1991), «Դաշնամուրի վարպետներ» (Մոնակո, 1992, 1–ին մրց.) միջազգ. մրցույթների դափնեկիր:

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ Վարդան Ռաֆայելի (ծ. 1951), ակնաբան–վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1991), պրոֆ. (1974): Ռաֆայել Ս. ***Մամիկոնյանի*** որդին: ՌԲԳԱ աչքի հիվանդությունների ինստ–ի տնօրեն (2016–ից, մինչ այդ՝ գիտ. և բուժ. գծով տնօրեն): Աշխ–ները վերաբերում են աչքի բեկունակության խանգարումների վիրաբուժ. շտկման հարցերին:

ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐ, նախարար. տոհմ Հայաստանում: Ըստ Մովսես Խորենացու և Սեբեոսի՝ Մ–ի նախնիները՝ ավանդ. Մամիկն ու Կոնակը, III դ–ի 1–ին կեսին Ճենաց աշխարհից (Տայք) տարածվել են Հայաստանի այլ շրջաններ: ***Խոսրով Ա*** Մեծը Մ–ին դասել է հայ նախարարների շարքը և, որպես ժառանգ. կալվածք, հատկացրել Տայքը: IV դ–ի սկզբին Տարոնը դարձել է նրանց սեփականությունը, իսկ գվո–ի Ողական ամրոցը՝ Հայոց սպարապետի աթոռանիստը: Արշակունիների անկումից (428) հետո Մ. համախմբել են հայրենասեր ուժերին և շարունակել ազատագր. պայքարը (450–451, 481–484, 571–572) Սասանյան Պարսկաստանի դեմ: Մ–ից անմահացել են Վասակ, Սամվել, Մուշեղ, Մանվել (IV դ.), Վարդան, Վահան, Վարդ (V դ.), Կարմիր Վարդան (VI դ.), Դավիթ, Գրիգոր, Մուշեղ (VII–VIII դդ.) սպարապետները: 772–775–ին Մ–ի գլխավորած հակաարաբ. մեծ աստամբության պարտությունից հետո Հայաստանում ղեկ. դերն անցել է նրանց մրցակից Բագրատունիներին:

Մ–ից են սերել ***Թոռնիկյանները*** (Սասուն): Զաքարյանների հզորացման ժամանակաշրջանում (XII–XIII դդ.) հայտնի են Դսեղի Մ. (Գուգարք), որոնց շառավիղները XIX դ–ում կրել են Թումանյան ազգանունը (ներկայացուցիչներից է Հովհաննես Թումանյանը):

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ Լև Հրազդանի (1915–2000), ճարտարագետ–էլեկտրիկ: Տեխ. գիտ. դ–ր (1959), պրոֆ. (1961): ՌԴ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1972): Հրազդան ***Մամիկոնյանցի*** որդին: Համամիութ. «Էլեկտրականություն» (ռուս.) ամսագրի գլխ. խմբ. (1973–90): Աշխ–ները վերաբերում են հզոր էլեկտրաէներգ. համակարգերի հուսալիության բարձրացման և էլ. մեքենաների կատարելագործման հարցերին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1986):

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ Հրազդան Մուշեղի (1890–1976), ճարտարագետ, այրվող գազանավթ. շատրվանների հրշիջման մասնագետ, ճարտարագետ–գնդ.: Լև ***Մամիկոնյանցի*** հայրը: Աշակել է այրվող գազանավթ. շատրվանների արագ հրշիջման նոր մեթոդ և տեխնիկա: Զգալի ավանդ ունի նաև Հայաստանում ռազմականացված հրդեհ. պաշտպ–յան կազմակերպման գործում:

Լենինի (2), Աշխ. կարմիր դրոշի (1930), Կարմիր աստղի (1941) շքանշաններ:

ՄԱՄԻԿՈՆՈՎ, Հակոբ Գասպարի (1921–1993), ինքնաշխատ կառավարման համակարգերի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1966), պրոֆ. (1967): Աշխ–ները վերաբերում են կառավարման ինքնաշխատ համակարգերի նախագծման, տեղեկատվ. ապահովման և տվյալների մշակման հարցերին:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1984), «Պատվո նշան» շքանշան:

ՄԱՄԻՆ–ՍԻԲԻՐՅԱԿ (Մամին) Դմիտրի Նարկիսովիչ (1852–1912), ռուս գրող: Այսպես կոչված սոցիոլոգ. վեպի հիմնադիրներից: Հեղինակ է «Պրիվալով–ների միլիոնները» (1883, հայ.՝ 1955), «Լեռնային բույն» (1884), «Ոսկի» (1892) վեպերի, «Ուրալյան պատմվածքներ» (հ. 1–4, 1888–1901) ժող–ի, նաև մանկ. («Ալյոնուշկայի հեքիաթներ», 1894–96, հայ.՝ 1954, «Որսորդ Եմելյան», 1884, հայ.՝ 1937, «Մոխրավզիկը», 1893, հայ.՝ 1928, ևն), դրամատիկ. երկերի, գրույցների: Հայ. հրատարակվել են նաև «Լուսատիկ–ներ» (1907), «Հանցանք» (1909), «Ընտիր պատմվածքներ» (1935), «Պատմվածքներ» (1958) ժող–ները:

ՄԱՄԻՋԱՆՅԱՆ Արտաշես Մկրտչի (1910–1999), ճարտ.: Ճարտ–յան թեկնածու (1952), պրոֆ. (1971): ՀՀ վաստ. շինարար (1960), ՀՀ ժող. ճարտ. (1987): ՀՊՃՀ համալիրի գլխ. հատակագծի (1950) հեղինակն է: Նրա նախագծերով Երևանում կառուցվել են նաև Հաղթանակի կամուրջը (1945), փորձն. բնակելի տներ (1963–68): Աշխ–ները վերաբերում են շին. տեխնիկայի և ճարտ. արվ–ի փոխհարաբերության, արդ. տնաշինության հարցերին:

ՄԱՄԻՋԱՆՅԱՆ Էրիկ Արտաշեսի (ծ. 1936), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1975), պրոֆ. (1980): Աշակել է իոնացման կալորիմետրի և նեյտրոն. դերմոնիտորի հնարավորությունների ընդլայնման եղանակներ: «Պիոն» և «Անի» գիտափորձերի ազգ. կենտրոնի ստեղծման ղեկ–ներից: Բացահայտել է բարձր էներգիաների պիոնների բազմամասնիկ. ծնման օրինաչափություններ:

ՄԱՄԼԵԵՎ, Յուրի Վիտալիչ (1931–2015), ռուս գրող, փիլ.: 1974–ից՝ վտարանդի: «Մետաֆիզիկական ռեալիզմ» գր. հոսանքի հիմնադիրը: Հեղինակ է «Շրջմոլիկներ» (1966–68, հրտ.՝ 1986), «Մոսկովյան գամբիտ» (1985, հրտ.՝ 1993), «Թափառող ժամանակ» (2001), «Խաղաղություն և քրքիջ» (2003), «Ուրիշը» (2006) վեպերի, «Հավերժական տունը» (1991) վիպակի, նաև բանաստեղծությունների, պիեսների, էսսեների:

ՄԱՄԼԻՉ, ճնշմամբ նյութերի մշակման (կաղապարում, արհեստ. ալմաստի ստացում ևն) ստատիկ (ոչ հարված.) գործողության մեքենա: Մետաղամշակման մեջ օգտագործում են կոման, դրոշմման, մամլման (արտամղման), հավաքման և այլ նպատակներով: Ըստ շարժաբերի տեսքի՝ տարբերում են հիդրավլիկ., մեխ. և հիդրոմեխ. Մ–ներ: Առավել խոշոր Մ. զարգացնում է մոտ 750 *ՄՆ* ուժ:

ՄԱՄԼՈՒՔՆԵՐ [արաբ.՝ ***մուլք*** – սեփականություն, բառացի՝ որևէ մեկին պատկանող (ստրուկ)], վաղ տարիքում գերված կամ գնված ու մահմեդականացված զինվորներ միջնադար. Եգիպտոսում: 1250–ին Մ–ի վերնախավն անցել է իշխանության գլուխ: 1337–ին Մ. գրավել են Կիլիկիայի գլխ. նվինգստ Այասը, իսկ 1375–ին կործանել են Կիլիկիայի հայկ. թագավորությունը: 1517–ին օսմ. թուրքերը նվաճել են Եգիպտոսը: 1711–96–ին երկիրը փաստորեն կառավարել են Մ.: 1811–ին ***Մուհամմեդ Ալին*** վերջնականապես բնաջնջել է Մ–ին:

ՄԱՄԻԹԱՍԱԼՈՐԵՆԻ (Prunus institia), վարդազգիների ընտանիքի սալորենի ցեղի բույս: Մշակվում է Եվրոպայում, ԱՊՀ երկրներում, ՀՀ–ում՝ Սյունիքի, Վայոց ձորի, Լոռու և այլ մարզերում: Ծառի բարձր.՝ 5–6 *մ*, սաղարթը՝ լայն–կլորավուն, ճյուղերը՝ առանց փշերի: Պտուղներն օգտագործում են թարմ և վերամշակված: Ցրտադիմացկուն է, հիվանդությունների և վնասատուների նկատմամբ՝ կայուն:

ՄԱՄԻԽ (Prunus spinpsa), **մամխենի**, վարդազգիների ընտանիքի սալորենի ցեղի ծառեր կամ թփեր: Սաղարթը լայն է, գնդաձև, երբեմն՝ բրգաձև: Բունը և ճյուղերը փշոտ են: Օգտագործում են որպես ցածրաճ պատվաստակալ: Վայրի Մ. աճում է ՀՀ Տավուշի, Լոռու, Վայոց ձորի, Սյունիքի մարզերում:

ՄԱՄՅԱՆ Իգնատ Հմայակի (1947–2008), գրող, հրապարակախոս, խմբ.: 1994–ին՝ «Առավոտ», 2000–ին՝ «Կռունկ» թերթերի հիմնադիր–խմբ., 2003–07–ին՝ «Եզերք» թերթի խմբ.: Հեղինակ է «Հանդի հաց» (1978), «Երկնաքարեր» (1985), «Վայրի մեղր» (1999) և այլ բանաստեղծությունների ժող–ների, «Եղերական լուսաբաց» (1992), «Արծաթե եզերք» (2003) և այլ վիպակների, «Վիրավոր լեռան ճիչը» (2005), «Մարտնչող լեռնահովիտ» (2006), «Տոհմականչ» (2008) վեպերի, «Հեռավոր զանգերի կանչը» (2008) պատմվածքների ժող–ի և այլ գործերի:

ՄԱՄՅԱՆ Հենրիկ Արամի (1934–2014), նկարիչ: ՀՀ ժող. նկարիչ (2010): Պրոֆ. (1990): Հեղինակ է գրքերի ձևավորումների (Ե. Չարենցի «Ամբոխները խելագարված», 1968–77, Լ. Շանթի «Հին աստվածներ», ռուս., 1979–2001, Դ. Վարուժանի «Հարճը», 1977, Վ. Դավթյանի «Հայերգություն», 2008, Հ. Թոքմաջյանի «Կայսրը», 2011, ևն), հաստոց. գրաֆիկ. գործերի («Ձմեռ», 1981, «Լուսին», 1983, ևն), որմնանկարների (Գ. Խանջյանի «Վարդանանք» եռանկարի 3–րդ մասի, 2000–02, Երևան, «Գաֆեսճյան» արվ–ի կենտրոն), մատենանիշների:

«Մեծ ոսկե գավաթ» (1996, Մադրիդ), ՀԱԳ «Հակոբ Մեղապարտ» հուշամեդալ (2009), ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2009):

ՄԱՄՅԱՆ Սպարտակ Գարեգինի (ծ. 1940), մետաղագետ: Տեխ. գիտ. դ–ր (2003), պրոֆ. (2003): Հայաստանում մետաղնեի ջերմ. մշակման դպրոցի հիմնադիրը: Աշխ–ները վերաբերում են բարձրամուր միատարր և բաղադրյալ պողպատների ու համաձուլվածքների ստացման հարցերին:

ՄԱՄՈԳՐԱՖԻԱ (< լատ. mamma – կաթնագեղձ և ...*գրաֆ*), **կաթնագեղձագրություն**, կաթնագեղձերի ռենտգենաբան. հետազոտություն (սովորաբար՝ առանց հակադր. նյութի օգտագործման):

ՄԱՄՈՆՏ, փղերի ընտանիքի անհետացած կաթնասուն կենդանի: Ապրել է պլեյստոցենի 2–րդ կեսին Եվրասիայում և Հս. Ամերիկայում: Եղել է քարի դարի մարդու ժամանակակիցը: Բարձր.՝ 2,5–3,5 *մ*: Անհետացել է պլեյստոցենի վերջին: Սիբիրի հս–ում (Կոլիմայի ավազան և այլուր) և Ալյասկայում հավերժ. սառածության շերտերում գտնվել են Մ–ներ՝ պահպանված փափուկ հյուսվածքներով, մաշկով և բրդով:

ՄԱՄՐԻՉ (Clematis), գորտնուկազգիների ընտանիքի բազմամյա թփերի կամ խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 250 տեսակ, ՀՀ-ում՝ 2՝ սովոր. կամ խաղողատերև ու արլ.՝ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի, Սյունիքի և այլ մարզերում: Ցողունը մագլցող է (լիան), փաթաթվող կամ կանգուն: Դեղազարդիչ է և թունավոր:

ՄԱՄՈՒԼ, 1. լայն իմաստով՝ ողջ տպագիր արտադրանքը, նեղ, բայց տարածված իմաստով՝ պարբ. հրտ–յուններ, մասնավորապես՝ թերթեր և ամսագրեր: 2. Չափի միավոր հրտչ. գործում և պոլիգրաֆիայում, հավասար է չափորոշված թղթի 1 տպագիր երեսին: Գործածվում են՝ հեղինակային Մ., տպագր. կամ ֆիզ. Մ., հաշվահրատարակչ. Մ.: Վերջինս կիրառվում է հրտչ. աշխ-ի պլանավորման, խմբ-ների, տեխ. խմբ-ների, սրբագրիչների աշխ-ների ծավալը որոշելու համար:

«ՄԱՄՈՒԼ», հաս–քաղ., երգիծ. պարբերաթերթ (1869–83, Կ. Պոլիս): Տնօրեն–խմբ.՝ Գևորգ Այվազյան:

ՄԱՄՈՒԼԻ ՕՐ, խորհրդ. մամուլի ավանդ. օրը. նշվել է ամեն տարի մայիսի 5-ին՝ ի նշանավորումն *«Պրավդա»*-ի 1-ին համարի լույսընծայման (1912): ՀՀ անկախացումից հետո սահմանվել է նաև *Հայ մամուլի օր*:

ՄԱՄՈՒԼՅԱՆ Ռուբեն Զաքարի (1897–1987), կինոռեժ.: 1918-ին Թիֆլիսում հիմնադրել է թատեր. ստուդիա: 1919-ից աշխատել է Լոնդոնի, Փարիզի թատրոններում: 1923-ից՝ ԱՄՆ-ում: Կինոյում 1-ին անգամ օգտագործել է զուտ տեխ. և այլ հնարքներ («Ծափահարություններ», 1929, «Քաղաքային փողոցներ», 1931): Նրա «Բեթի Շարպ»-ը (1935) 1-ին գունավոր ֆիլմն է աշխարհում: Նկարահանել է նաև «Քրիստինա թագուհին» (1935), «Արյուն և ավազ» (1941), «Ամառային արձակուրդ» (1948) և այլ ֆիլմեր:

ՄԱՄՈՒԼՈՎ (Սամույան) Ստեփան Սողոմոնի (1902–1976), ԽՍՀՄ ՊԱԿ-ի 3-րդ կարգի կոմիսար (1943), գեն–լեյտ. (1945): Եղել է Կ(բ)Կ Թիֆլիսի քաղկոմի քարտուղար, Վրաստանի Կ(բ)Կ ԿԿ բաժնի վարիչ, 1939–46-ին՝ ԽՍՀՄ ՆԳԺԿ (ՆԳՆ) քարտուղարության պետ, 1946–53-ին՝ ԽՍՀՄ ՆԳ նախարարի տեղակալ: 1953-ին ձերբակալվել է, դատապարտվել 15 տարվա ազատազրկման:

ԽՍՀՄ Կարմիր դրոշի (1940, 1943), Կարմիր աստղի (1944, 1951), ՀՄՊ 1-ին աստիճանի (1945), Լենինի (1949, 1952) շքանշաններ:

ՄԱՄՈՒՌՆԵՐ (Bryophyta), **մամռանմաններ**, բարձրակարգ բույսերի բաժին: Հիմնականում՝ բազմամյա կամ միամյա ցամաք., հազվադեպ՝ քաղցրահամ ջրերի ինքնասուն բույսեր: Միատուն կամ երկտուն (երբեմն՝ բազմատուն) են: Բնորոշվում են ածման խմբակ. ձևերով (ճիմ, բուսաթմբեր): Սեռ. բազմացման ժամանակ բազմացման օրգաններն իգական արքեգոնիումները և արական անթերիդիումներն են, անսեռ բազմացման ժամանակ՝ սպորոգոնիումները: Հայտնի է մոտ 20 հզ. (մոտ 1000 ցեղատեսակ), ՀՀ-ում՝ 2: Տարածված են ամենուրեք՝ բացի ծովերից, աղուտներից, սաոցադաշտերից և ուժեղ էրոզացված հողերից: Երբեմն առաջացնում են հողերի ճահճացում, վատացնում մարգագետինների որակը: Տորֆ. ճահիճներում կազմում են տորֆի գլխ. զանգվածը: Կիրառում են բժշկության մեջ (օժտված են հակաբիոտիկ հատկություններով), ինչպես նաև որպես գղտ. կենդանիների ցամքար ևն:

ՄԱՄՈՒՐՅԱՆ Մատթեոս Հովհաննեսի (1830–1901), հրապարակախոս, գրող, թարգմանիչ, մանկավարժ, խմբ., հրտ.: 1860–65-ին՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի դիվանապետ, 1865–99-ին դասավանդել է Զմյուռնիայի Մեսրոպյան (նաև տեսուչ՝ ընդհատումներով) և Հռիփսիմյան վարժարաններում: 1883-ին Զմյուռնիայում հիմնադրել է տպարան (Մ-ի մահվանից հետո անցել է որդուն, գործել է մինչև 1920-ը, տպագրել շուրջ 80 անուն գիրք), 1871–1901-ին՝ *«Արեւելեան մամուլ»* հանդեսի հրտ–խմբ.: Հեղինակ է «Հայկական նամականի» (1872) և «Անգլիական նամականի...» (1880) հոդվածների ժող-ների, «Սեւ լեռին մարդը» (հրտ.՝ 1909) վեպի, նաև դպրոց. դասագրքերի: Թարգմանել է Ֆ. Վոլտերի, Յ. Վ. Գյոթեի, Ժ. Վեռնի, Վ. Սքոթի, Է. Ն. Տոլստոյի և ուր. գործերից, նաև «Հազար ու մի գիշեր» արաբ. հեքիաթների ժող-ը:

ՄԱՄՖՈՐԴ, **Մեմֆորդ** (Mumford), Լյուիս (1895–1990), ամերիկացի փիլ., սոցիոլոգ, ամերիկ. ճարտ-յան և քաղաքաշինության տեսաբան և պատմաբան: Քննադատել է գիտատեխ. առաջընթացի բացաս. հետևանքները, անջրպետը՝ տեխնոլոգիաների մակարդակների և բարոյականության միջև («Տեխնիկան և քաղաքակրթությունը», 1934, «Քաղաքը պատմության մեջ», 1961, «Առասպել մեքենայի մասին», 1967):

ՄԱՅԱ, հնդկացի ժողղ-ների խումբ Մեքսիկայում (հուաստեկներ, յուկատեկներ, օցաներ, չոլեր, չոնտալներ ևն, 2,1 մլն), Գվատեմալայում (չորտեր, չուխեր, հակալտեկներ, մամեր, իշիլիներ, կիչեներ ևն, 3,7 մլն), Բելիզում (30 հզ.), Հոնդուրասում (5 հզ.) և Սալվադորում: Խոսում են մայա-կիչե լեզվաընտանիքի լեզուներով, որոշ մասը՝ իսպ.: Հավատացյալները հիմնականում կաթոլիկ են: Մ-ներն Ամերիկայի հին քաղաքակրթություններից մեկի ստեղծողներն են հվ-արլ. Մեքսիկայում, Հոնդուրասում և Գվատեմալայում: IX դ-ում Մ-ների մեծ մասը կործանվել է տոլտեկների և հնդկացի այլ ցեղերի ներխուժման հետևանքով: Մ-ների քաջարի դիմադրության շնորհիվ իսպանացիների՝ *Յուկատանի* նվաճումը (1527-ից) տևել է 170 տարի: 1697-ին իսպանացիները նվաճել են Մ-ի վերջին անկախ քաղաքը՝ Տայասալը:

ՄԱՅԱ ԳԻՐ, *մայա* ցեղերի վանկագիրը: Հնագույն գրավոր հուշարձաններն ավանդված են մ. թ. I դ–ից: Գործածվել է մինչև XVI դ.: Պահպանվել են 3 մեծ ձեռագրեր և բազմաթիվ արձանագրություններ՝ քարի և խեցեղենի վրա: Վերծանել է Յ. Վ. *Կնորոզովը*:

ՄԱՅԱԿՈՎՍԿԻ Վլադիմիր Վլադիմիրովիչ (1893–1930), ռուս բանաստեղծ: Նախահեղ. շրջանի գործերում առկա է բանաստեղծի՝ իրականությունը որպես մարգարեություն բարձրացված հավատամքը («Վլադիմիր Մայակովսկի», 1914, ողբերգություն, «Վարտիքավոր ամպը», 1915, «Պատերազմն ու աշխարհը», 1917, պոեմներ, ևն): 1917-ից հետո ստեղծել է սոց. աշխարհի կարգուկանոնի մասին առասպելը («Միստերիա բուֆ», 1918, պիես, «150 000 000», 1921, «Վլադիմիր Իլյիչ Լենին», 1924, հայ.՝ 1940, «Լավ է», 1927, պոեմներ) և ողբերգականորեն սաստկացրել նրա արատավորությունը («Նիստամոլները», 1922, բանաստեղծություն, «Փայտոջիլը», 1928, «Բաղնիք», 1929, երգիծ. պիեսներ, հայ.՝ 1968): Գր. լեզվի բարենորոգիչ: Մեծ ազդեցություն է թողել XX դ-ի պոեզիայի վրա: Ինքնասպան է եղել: Հայ. հրատարակվել են նաև «Հատընտիրը» (1940), «Ընտիր երկեր» (1950) և այլ գրքեր:

ՄԱՅԱՆՈ (Maiano), իտալացի ճարտ. և քանդ. եղբայրներ: **Զուլիանո դա Մ.** (1432–1490), կառույցներում օգտագործել է Ֆլորենցիայի ճարտ. դպրոցի ավանդույթները (Սպանոկկիի պալատը Սիենում, 1473-ից), ինտերիերները կահավորել է ինտարսիայի (փայտի վրա դրվագված նախշերով) տեխնիկայով: **Բենեդետտո դա Մ.** (1442–1497), քանդակներն առանձնացել են պլաստիկ. և ճարտ. մանրամասերի նուրբ ներդաշնակմամբ (Սանտա Կրոչե եկեղեցու ամբիոնը, Ֆլորենցիա, 1472–76, «Ֆ. Ստրոցցի», կիսանդրի, մոտ 1490, Ստրոցցիի պալատը Ֆլորենցիայում, 1489-ից):

ՄԱՅԱ–ՄՈԿԵ ԼԵԶՈՒՆԵՐ, ամերիկ. հնդկացիական լեզվաընտանիք: Ունի 3 լեզվաճյուղ՝ մայա (մայա-կիչե, հին մայա, յուկատեկյան մայա, հուաստեկյան, չոլ, կիչե ևն), սոկե-միշե (սոկերեն, տապաչու լտեկերեն, վերակրուսերեն ևն), տոտոնակյան (տոտոնակերեն, տեպեուաերեն) լեզուներ: Արդի Մ-ս. լ-ի գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՄԱՅԱՐ (Maillart) Ռոբեր (1872–1940), շվեյցարացի ճարտարագետ-շինարար, ճարտ.: Մշակել է երկաթբետոնե նոր կառուցվածքներ, ստեղծել կատարյալ պլաստիկ ձևերով կամար. կամրջի նոր տիպ (Սալգինի կիրճի վրայի կամուրջը, 1929–30):

ՄԱՅԴԱՆԵԿ (Majdanek), գերմանաֆաշիստ. համակենտրոնացման ճամբար (1941–44) Լյուբլին ք-ի մոտ (Լեհաստան): Մ-ում ոչնչացվել է շուրջ 1,5 մլն մարդ:

ՄԱՅԵՐ (Mayer) Թորբիաս Յոհան (1723–1762), գերմանացի աստղագետ: Մշակել է Լուսնի շարժման տեսությունը, կազմել ծովի վրա երկայնությունների որոշման բավականաչափ ճշգրիտ լուսն. աղյուսակներ, կենդանաշրջանի 998 աստղերի աստղացուցակ, ստեղծել աստղագիտ. *պատաժային գործիքի* տեսությունը:

ՄԱՅԵՐ Յուլիուս Ռոբերտ ֆոն (1814–1878), գերմանացի բնախույզ, բժիշկ: Առաջինն է ձևակերպել Էներգիայի պահպանման օրենքը (մեխ. աշխ-ի և ջերմության համարժեքություն, 1841) և տեսականորեն հաշվարկել ջերմության մեխ. համարժեքը (1842), որոնք, սակայն, երկար ժամանակ չեն ընդունվել:

ՄԱՅԵՐ Զոզեֆ Էդվարդ (1904–1983), ամերիկացի ֆիզիկոս: Իղեալ. գազերի ժամանակից տեսության հիմնադիրներից: Աշխ-ները վերաբերում են վիճակագր. ֆիզիկային, թերմոդինամիկային, քվանտ. մեխանիկային, քիմ. ֆիզիկային: Ստացել է (1937) իրական գազի վիճակի ընդհ. հավասարումը:

ՄԱՅԵՐՈՎԱ (Majerová) Մարիա (1882–1967), չեխ գրող: Չեխոսլովակիայի ժող. արվեստագետ (1947): Չեխ. գրկ-յան մեջ սոց. ռեալիզմի հիմնադիրներից: Հեղինակ է «Կայծակի ուղին» (1951), «Վայրի Արևմուտք» (1954) վիպակների և պատմվածքների, «Հաղթական երթ» (1953), «Արծաթից դրվագված աղջիկներ» (1964) ակնարկների ժող-ների:

Կ. Գոտվալդի անվ. Պետ. մրց. (1955):

ՄԱՅԵՐՍՈՆ (Myerson) Ռոջեր (ծ. 1951), ամերիկացի տնտեսագետ: Աշխ-ները վերաբերում են խաղերի տեսությանը, տնտ. որոշումների կայացման հավանական մոդելներին: Նորելյան մրց. (2007, Լ. *Հուրվիչի* և Է. *Մասկինի* հետ):

ՄԱՅԻԼՅԱՆ Աննա Լեոնիդի (ծ. 1970), երգչուհի (սոպրանո): ՀՀ արվ. վաստ. գործիչ (2008): «Սաղմոս» մշակութ. կենտրոնի (2000), «Վարպետներ» վոկալ անսամբլի, «Էթնո» վոկալ եռյակի (2006, գեղ. ղեկ.) հիմնադիրը: Երկացանկում՝ արևմտաեվրոպացի, հայ կոմպոզիտորների երկեր, հայ հոգևոր և ազգ. երգեր:

«Իբլա–Գրանդ Պրաիզ» (Հատուկ մրց.՝ 2002, Իտալիա) միջազգ. մրցույթների դափնեկիր, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2003):

ՄԱՅԻԼՅԱՆ Անտոն Սարգսի (1880–1942), կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ, հաս. գործիչ: Ադրբ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1930): Աշակերտել է Մակար *Եկմալյանին*, երգել է Քրիստափոր *Կարա–Մուրզայի* երգչախմբում: Բաքվի Հայարտան երաժշտ. բաժանմունքի ղեկ-ը: Հիմնադրել է թատեր-երաժշտ. ստուդիա, երգչախմբեր: Խմբագրել է և հրատարակել *«Թատրոն եւ երաժշտութիւն»* հանդեսը: Հեղինակ է «Սաֆա» (1933, բեմ.՝ 1939) օպերայի, բալետի, երաժշտ. կատակերգությունների, սիմֆոնիայի, մանկ. օպերաների («Գյուլնազ տատի հեքիաթը», 1906, «Չարաճճի Միկիչը», 1926, ևն), վոկալ-սիմֆ., կամեր-գործիք. և այլ գործերի: Մշակել է ժող. երգեր:

ՄԱՅԻԼՅԱՆ Լևոն Մինասի (1891–1976), թերապևտ: Բժշկ. գիտ. դ-ր (1935), պրոֆ. (1938): Ադրբ. ԽՍՀ վաստ. բժիշկ (1939), գիտ. վաստ. գործիչ (1941): Աշխ-ները վերաբերում են ստամոքսի և 12-մատնյա աղիի խոց. հիվանդության վաղ ախտորոշման և ֆիզիոթերապևտիկ եղանակներով բուժման հարցերին: Լենինի շքանշան (1952):

ՄԱՅԻԼՅԱՆ Լևոն Ռաֆայելի (ծ. 1954), ճարտարագետ-շինարար: Տեխ. գիտ. դ-ր (1989), պրոֆ. (1990): ՌՃՇԳԱ թղթ. անդամ (2010–ից): ՌԴ վաստ. շինարար (1995): Ռաֆայել *Մայիլյանի* որդին: Աշխ-ները վերաբերում են երկաթբետոնե կոնստրուկցիաների հաշվարկի հարցերին:

ՌԴ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի շքանշան (2010):

ՄԱՅԻԼՅԱՆ Կարինե Ռաֆիկի (ծ. 1968), կենսաբան: Կենսբ. գիտ. դ-ր (2000): Աշխ-ները վերաբերում են կենսբ. և մոլ. հոգեբուժությանը:

ՄԱՅԻԼՅԱՆ Պավել Դանիելի (ծ. 1954), ստոմատոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (1999): Բացահայտել է կարգավորվող ուժային գործոնների ազդեցությամբ ծնոտների ոսկրերի աճը, մշակել ատամների բուժման հիմնակմախք. զսպանակային ապարատներ (1997–99), գանգի հիմի նկատմամբ վերին ատամնաշարի կամ ծնոտի ինտենսիվ ձգման եղանակ (1998–99):

ՌԲՆԳԱ անդամ (2000):

ՄԱՅԻԼՅԱՆ Ռաֆայել Լևոնի (1924–2004), շինարար-գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1971), պրոֆ. (1972): Լևոն Ռ. *Մայիլյանի* հայրը: ՌՃՇԳԱ պատվ. անդամ (2002), ՌԽՖՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1984): Աշխ-ները վերաբերում են երկաթբետոնե կառուցվածքների նախագծման և հաշվարկի կատարելագործման հարցերին:

ՄԱՅԻԼՅԱՆ Ռաֆիկ Ավագիմի (1927–2000), կենսաբան-ձկնաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1968), պրոֆ. (1977): Աշխ-ները վերաբերում են Սևանի սիգերի, ՀՀ ջրավազանների ձկնատնտ-յունների շահագործման գիտ. հարցերին և Արարատյան դաշտի արհեստ. ջրամբարների թառափաձկների գենոֆոնդի պահպանման, նրանց աճեցման կենսատեխնոլոգիայի խնդիրներին:

ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ 1920, զինված ապստամբություն ՀՀ իշխանությունների դեմ՝ երկրում խորհրդ. իշխանություն հաստատելու նպատակով: Նախապատրաստել ու ղեկավարել է Հայաստանի կոմկուսը: Ապստամբության կենտրոնն Ալեքսանդրապոլն էր, ՋՈՒ-ի հրամ-ը՝ Սարգիս *Մուսայելյանը*: Մայիսի 14-ին Ալեքսանդրապոլ են մտել կառավար. զորքերը, և վերականգնվել է օրին. իշխանությունը: Մ. ա. ճնշվել է նաև մյուս վայրերում: Արգելվել է Հայաստանի կոմկուսի գործունեությունը:

«ՄԱՅԻՍՅԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ» 1895, Արմ. Հայաստանում և Օսմ. կայսրության հայաբնակ վայրերում վարչ., դատ. և այլ բարեփոխումների ծրագիր: Կազմել են Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի դեսպանները՝ *Բեռլինի վեհաժողովի* (1878) 61-րդ հոդվածի համաձայն, և ներկայացրել սուլթանի կառ-յանը մայիսի 11-ին (այստեղից էլ՝ անվանումը): Սկսվել է թուրքերի համար սովոր. ձգձգումների քաղ-յունը, և կառ-յունը չի ընդունել անգամ խիստ չափավոր «Մ. բ.»-ի ծրագիրը:

ՄԱՅԻՄՅԱՆ ԲԶԵԶՆԵՐ, *ջորյակներ*, թերթաբեղիկավորների ընտանիքի բզեզների էկոլոգ. խումբ: Լայնատերև և ասեղնատերև բնափայտային ցեղերի բույսերի վնասատուներ են Եվրասիայում: Կարմրագորշավուն են, երկ.՝ 22–29 *մմ*: Սնվում են տերևներով, թրթուրները՝ արմատներով:

ՄԱՅԿՈՊ, ք. ՌԴ-ում՝ Բելայա գետի ափին, *Ադղեհայի* վարչ. կենտրոնը: Բն.՝ 144,6 հզ. (2016): Հիմնադրվել է 1857-ին՝ որպես ռազմ. ամրություն: Մ-ում հայերը հաստատվել են XIX դ-ում: 1901-ին օծվել է Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, 1905-ին եկեղեցուն կից բացվել է դպրոց: Երկար տարիներ գործել են Շահումյանի անվ. հայկ. ակումբը, որտեղ բեմադրվել են հայկ. պիեսներ: 2016-ին Մ-ում ապրել է շուրջ 4 հզ. հայ:

ՄԱՅՄԵԽ, *Ձիթհանից սար*, լ-գագաթ Փամբակի լ-շղթայում՝ Լոռու և Կոտայքի մարզերի սահմանագլխին՝ Վանաձոր ք-ից հվ: Բարձր՝ 3094 *մ*: Կազմված է պալեոգենի հրաբխածնստվածք. ապարներից, գերակշռող են ներժայթքները: Կան ժայռ. մերկացումներ: Լանդշաֆտը լ-մարգագետնային է:

ՄԱՅՄՈՆԻԴ (Maimonides) Մովսես (Մոշե բեն Մայմոն, 1135–1204), եգիպտացի հրեա փիլ.: Եղել է պալատ. բժիշկ: Ձգտել է համադրել աստվածաշնչյան հայտնությունը և արաբ. արիստոտելականությունը: Մ-ի «Մոլորվածների ուղեցույց» (արաբ., 1190) երկը որոշակիորեն ազդել է XIII–XIV դդ-ի ուշ սխոլաստիկայի (հատկապես՝ Ալբերտ Մեծի և Թովմա Աքվինացու) վրա:

ՄԱՅՆԻ ՖՐԱՆԿՖՈՒՐՏ (Frankurt am Main), ք. Գերմանիայի Հեսեն երկրամասում՝ Մայն գետի ափին: Բն.՝ 670,8 հզ. (2010): Տրանսպորտ. հանգույց է, գլխ. ֆին. կենտրոն (Մ. Ֆ-ի ֆոնդ. սակարանը Եվրոպայում խոշորագույններից է): Արդյունաբ. ամենամյա տոնավաճառներ: Ունի համալսարան (Գյոթեի անվ.), ինստ-ներ, Արվ-ի բարձրագույն դպրոց, թանգարաններ, պատկերասրահ, կենդբ. այգի, մետրոպոլիտեն: 1-ին անգամ հիշատակվում է 794-ին: Պահպանվել են XIII–XVIII դդ-ի ճարտ. հուշարձաններ: Մ. Ֆ-ում է ծնվել Յ. Վ. Գյոթեն:

ՄԱՅՆՀՈՖ (Meinhof) Կառլ (1857–1944), գերմանացի լեզվաբան: Ստեղծել է *բանտու լեզուների* պատմահամեմատ. քերակ-ը և ինչյունաբանությունը («Բանտու լեզուների համեմատական քերականության հիմունքները», 1906), նկարագրել Աֆրիկայի բազմաթիվ լեզուներ, հետազոտել աֆրիկ. ժողղ-ների կրոնը, պոեզիան, իրավունքը:

ՄԱՅՆՈՏ (Minot) Ջորջ Ռիչարդս (1885–1950), ամերիկացի ախտաբան-ֆիզիոլոգ և արյունաբան: Պեռնիցիոզ սակավարյունության բուժման լյարդ. մեթոդի հեղինակներից:

Նորելյան մրց. (1934, Ու. Պ. *Մերֆիի* և Ջ. Հ. *Ուիփլի* հետ):

ՄԱՅՆՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ Յոհան Գուտենբերգի անվան, Գերմանիայի հնագույն համալսարաններից: Հիմնադրվել է 1477-ին: 2016-ին ուներ ավելի քան 35 հզ. ուսանող:

ՄԱՅՈԼԻԿԱ (իտալ.՝ maiolica), խեցեղենի տեսակ, գունավոր թրծված կավե ջնարակված իրեր՝ խոշոր ծակոտկեն մակերեսով: Գործնականում (գեղ.) Մ. են նաև անթափանցիկ ջնարակով պատած գունավոր կամ սպիտակ խեցեղենը: Հայտնի է Վերածննդի ժամանակաշրջանի իտալ. Մ.:

ՄԱՅՈՐ (Major) Տամաշ (1910–1986), հունգար դերասան, ռեժ.: ՀԺՀ ժող. արտիստ (1950): 1945-ից՝ Բուդապեշտի Ազգ. թատրոնի տնօրեն, 1962–79-ին՝ գլխ. ռեժ.: Դերերից են՝ Իվան Վասիլևիչ (Մ. Ա. Բուլգակովի «Իվան Վասիլևիչ»), Լյուցիֆեր (Ի. Մադաչի «Մարդու ողբերգությունը») ևն: Բեմադրել է Մ. Գորկու «Թշնամիներ» (1949), Բ. Բրեխտի «Բարի մարդը Սեզուանից» (1972) և այլ գործեր: 1941-ից նկարահանվել է կինոյում:

ՄԱՅՈՐՈՎՆԵՐ, ռուս մարզիկ եղբայրներ (տափօղակով հոկեյ), «Սպարտակ» թիմի հարձակվողներ (Մոսկվա, 1956–69): 1. **Բորիս Ալեքսանդրովիչ Մ.** (ծ. 1937), ԽՍՀՄ ս. վ. վ. (1963), Ռուսաստանի ս. վ. մ. (1979): Ձմեռ. օլիմպ. խաղերի (1964, 1968), աշխարհի և Եվրոպայի (1963–68), ԽՍՀՄ (1962, 1967, 1969) չեմպիոն: 1988-ից՝ մարզ. հեռուստալրագրող: 2. **Եվգենի Ալեքսանդրովիչ Մ.** (1938–1997), ԽՍՀՄ ս. վ. վ. (1963): Ձմեռ. օլիմպ. խաղերի (1964), աշխարհի և Եվրոպայի (1963–64), ԽՍՀՄ (1962, 1967) չեմպիոն: 1982-ից՝ մարզ. հեռուստալրագրող:

ՄԱՅՍՈՒՐՅԱՆ Նիկոլայ Ալեքսանդրի (1896–1976), բուսաբույծ-ընտրասերումնաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1944), պրոֆ. (1934): ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1945): Աշխ-ները վերաբերում են հատիկավոր և հատիկընդավոր բույսերի կարգաբանության, կենսբ-յան, մոլախոտերի դասակարգման խնդիրներին: Ստացել է սոյայի, չումուզայի, գարու, լուպինի մի քանի սորտեր:

ՄԱՅՍՈՒՐՅԱՆ (Փուղինյան) Օլգա Միքայելի (1871–1931), դերասանուհի: ՎԽՍՀ վաստ. արտիստ (1930): 1895-ից հանդես է եկել Թիֆլիսում (Հայպետդրամայի հիմնադիրներից էր), ապա՝ Բաքվի

հայկ. թատրոնում: Եղել է ռեալիստ. կերպարների (Մարգարիտ՝ Շիրվանզադեի «Պատվի համար», Կրուչինինա՝ Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», Օֆելյա՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», Ամալյա՝ Ֆ. Շիլլերի «Ավազակներ», ևն) լավագույն մարմնավորողներից: Նկարահանվել է նաև կինոյում:

ՄԱՅՏՆԵՐ, **Մեյտներ** (Meitner), Լիզե (1878–1968), ավստրիացի ֆիզիկոս և ռադիոքիմիկոս: Բեռլինում Օ. *Հանի* հետ առաջարկել է ճառագայթաակտիվության հետազոտման մի շարք մեթոդներ: Հայտնաբերել է պրոտակտինիումը (1918), սկսել նեյտրոններով ուրանի ճառագայթահարման հետազոտությունները: 1938–60-ը՝ Շվեդիայում, այնուհետև՝ Մեծ Բրիտանիայում: Օ. Ֆրիշի հետ առաջինն է բացատրել ուրանի միջուկի ճեղքման Օ. Հանի և Ֆ. Շտրասմանի փորձերը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, կազմավորվել է *Էջմիածնի տպարանի* հիման վրա: Ակտիվացել է հատկապես Արլ. Հայաստանը Ռուսաստանին միավորվելուց հետո. 1833–46-ին հրատարակել է 18 անուն գիրք, 1868-ից՝ Մայր աթոռի պաշտոն. *«Արարատ»* ամսագիրը: 1889-ին կառուցվել է տպարանի նոր շենքը, համալրվել տառաձուլ., տպագր. նոր մեքենաներով ու հարստացվել տարբեր լեզուների տառատեսակներով: 2006-ին վերակազմավորվել է Մ. ա. ս. Է. հ–ական կենտրոնի, հրատարակում է հայ մատենագիրների երկեր, գիտ. աշխ–ներ, Մայր աթոռի Գանձատանը և Մտնդ–ում պահվող անտիպ գործեր, հայկ. միջնադար. ինքնուրույն և թարգմ. բնագրեր, դաս. և ժամանակակից գրկ., ինչպես նաև Մայր աթոռի պաշտոն. «Էջմիածին» ամսագիրը և «Քրիստոնյա Հայաստան» շաբաթաթերթը:

ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱ, (աշխարհիկ անունը՝ Ագնես Գոնչա Բոյաջիա, 1910–1997), հոոմեականթոլիկ. եկեղեցու միանձնուհի: Աստվածաբանության դ–ր: 1950-ին Հնդկաստանում հիմնադրել է Գթության ուխտ, որը 1989-ին կենտրոններ ուներ 87 երկրում:

1988-ի կործանարար երկրաշարժից հետո միաբանությունն օգնել է Հայաստանին: Մ. Թ. այցելել է աղետի գոտի գթության քույրերի հետ, ովքեր մարդասիր. օգնություն են ցուցաբերել տուժածներին:

ՄԱՅՐԱՀԱՎ (Lyrurus tetrix), **ընկուզահավ**, ագռավների ընտանիքի թռչուն: Երկ.՝ մոտ 35 *սմ*: Ապրում է հիմնականում Եվրասիայի ասեղնատերևազգիների անտառներում: Մնվում է մայրու ընկույզներով և այլ բնափայտային ցեղերի սերմերով, միջատներով: Նպաստում է մայրու տարածմանը:

ՄԱՅՐԱՊԵՏՅԱՆ Ալբերտ Խաչատուրի (1931–2015), համաճարակաբան, հիգիենիստ, առողջապ–յան կազմակերպիչ: Բժշկ. գիտ. դ–ր (1999): ՀՀ ԲԳԱ անդամ (2003): Ստեփան *Մայրապետյանի* եղբայրը: Եղել է Շրջակա միջավայրի հիգիենայի և կանխարգելիչ թունաբանության ԳՀԻ տնօրեն (1991–ից): Աշխ–ները վերաբերում են ՀՀ ազգաբնակչության շրջանում առողջ կենցաղի արմատավորման, վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի ու կանխարգելման, շրջակա միջավայրի առողջացման հարցերին:

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան, ԺՏՆՑ ոսկե (1966), Ն. Ֆ. Գամալեայի (1966), Լ. Պաստյորի (1967), Մ. Վ. Լոմոնոսովի անվ. ոսկե (2001) մեդալներ:

ՄԱՅՐԱՊԵՏՅԱՆ Ստեփան Խաչատուրի (ծ. 1939), կենսաբան: Գաղտ. գիտ. դ–ր (1988): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2000): Ալբերտ *Մայրապետյանի* եղբայրը: ՀՀ ԳԱԱ հիդրոպոնիկայի հիմնախնդիրների ինստ–ի տնօրեն (1980–86, 1990–2006): Աշխ–ները վերաբերում են եթերայուղատու, ներկատու և դեղատու բույսերի անհող աճեցման ֆիզիոլոգ., կենսաքիմ. և ագրոքիմ. առանձնահատկություններին, հիդրոպոնիկ. արտադր–յան կենսատեխնոլոգիաներին:

ՄԱՅՐԱՎԱՆՔ, ճարտ. համալիր ՀՀ Կոտայքի մարզի Սոլակ գ–ի մոտակայքում: VII դ–ում հիմնադրել է *Հովհան Մայրավանեցին* (Մայրագոմեցին): Սր Աստվածածնին եկեղեցին (XI–XII դդ.) 1 զույգ որմնամույթով գմբեթավոր դահլիճ է՝ խորանի 2 կողմում ուղղանկյուն հատակագծով, երկհարկ ավանդատներով:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ, պետության գլխ. քաղաքը, վարչաքաղ., հաճախ՝ նաև երկրի տնտ. և գիտամշակութ. կենտրոնը: Սովորաբար պետ. իշխանության և կառավարման բարձրագույն մարմինները Մ–ում են: Որոշ պետություններում Մ–ներն առանձնացված են որպես ինքնուրույն վարչ. միավոր, որի համար սահմանվում է կառավարման հատուկ կարգ: Հաս–քաղ. անբարենպաստ պայմանների պատճառով Հայաստանն ունեցել է 13 Մ՝ Տուշպա–Վան, Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Դվին, Բագարան, Շիրակավան (Երազգաորս), Կարս, Անի: ՀՀ Մ. Երևանն է (1918–ից), ԼՂՀ–ինը՝ Ստեփանակերտը (1921):

ՄԱՅՐԵՀԱՎԵՐ (Tetraonidae), **ցախաքլորներ**, հավանմանների կարգի թռչունների ընտանիք: Երկ.՝ 30–110 *սմ*, զանգվածը՝ 6,5 *կգ*: Հայտնի է 18 տեսակ՝ Եվրասիայում, Հս. Ամերիկայում, Ռուսաստանում, ՀՀում՝ 1՝ *Կովկասյան մայրեհավը*:

«ՄԱՅՐԵՆԻ», ուսումնամեթոդ. հանդես (1966–95, Երևան, մինչև 1982-ը՝ «Սովետական մանկավարժ» ամսագրի հավելված, 1966–90-ին՝ «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում»): ՀՀ լուսավորության նախ–յան հրտ–յուն: Խմբ–ներ՝ Ռոմա Դալլաքյան, Պատվական Խաչատրյան, Միքայել Մկրտչյան, Դավիթ Գասպարյան, Լյուդվիգ Կարապետյան, Լավրենտի Միրզոյան, Անահիտ Ադամյան:

ՄԱՅՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, **մատրիարխատ** (լատ.՝ mater, սեռ. հոլ.՝ matris – մայր և հուն.՝ arche – իշխանություն, սկիզբ, մայրական իրավունք), նախնադարյան հաս–յան զարգացման դարաշրջան. նախորդել է *հայրիշխանությանը*: Բնորոշ է կնոջ գերիշխող դիրքը, ունեցվածքի ժառանգման, սոց. դիրքի և այլ հարցերի որոշումը՝ ըստ մայրական գծի: Մ–ի վերաբերյալ պատկերացումն առաջացել է XIX դ–ում (Ի. *Բախոֆեն*, Լ. *Մորգան*, Ֆ. *Էնգելս*) և մինչև XX դ–ի սկիզբը գերիշխել է էվոլյուցիոնականության մեջ: Նպաստել է կանանց իրավահավասարության համար շարժման կայացմանը, *ֆեմինիզմին*:

ՄԱՅՐՀՈՖԵՐ (Mayrhofer) Մանֆրեդ (1926–2011), ավստրիացի լեզվաբան: ՌԳԱ արտ. անդամ (1988): Հեղինակ է հնդեվրոպաբանության՝ հնդեվրոպ. լեզուների պատմահամեմատ. քերակ–յանը (հին հնդ., պալի, հին պարսկ.), հին հնդ–ի ստուգաբանությանը, հնդեվրոպ. հնչակարգությանը, անվանաբանությանը վերաբերող աշխ–ների: Վիլհելմ Հարտելի (1988), կարդինալ Իննիցերի (2004) մրց–ներ:

ՄԱՅՐՈՒԹՅՈՒՆ, տվյալ մորից երեխայի սերած լինելը. հաստատվում է ծննդատան կամ բժշկ. այլ հիմնարկի համապատասխան փաստաթղթի հիման վրա՝ քաղաքաց. կացության ակտերի գրանցման (զագսի) մատյաններում երեխայի ծննդի գրանցմամբ: Ամուսնության մեջ չգտնվող մորից երեխայի սերումը հաստատվում է զագսին ուղղված մոր դիմումի հիման վրա:

ՄԱՅՐՈՒՂԱՅԻՆ ՋՐԱՆՑՔ, ոռոգման դեպքում՝ ոռոգման ցանցի հիմն. ջրանցքը կամ խողովակաշարը, որը ոռոգման աղբյուրից ինքնահոս եղանակով ջուր է տալիս ոռոգվող հողատարածքներին:

ՄԱՅՈՒՀՈՒՄԻ Տոսիրո (1929–1997), ճապոնացի կոմպոզիտոր: Ճապոն. ազգ. երաժշտության ոճ. ավանդույթները համադրել է ավանգարդիստ. տեխնիկային: Հեղինակ է «Ոսկե տաղավար» (1976), «Աստվածների օրերը» (1996) օպերաների, «Բուգակու» (1962) բալետի, նաև կանտատի, օրատորիաների, սիմֆ., կամեր–գործիք. գործերի, թատրոնի և կինոյի երաժշտության ևն:

ՄԱՅՔԵԼՍՈՆ (Michelson) Ալբերտ Աբրահամ (1852–1931), ամերիկացի ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ արտ. պատվ. անդամ (1926): Ծնվել է Լեհաստանում, 1854-ից՝ ԱՄՆում: Ստեղծել է օպտիկ. ճշգրիտ սարքեր՝ Մ–ի ինտերֆերաչափ, Մ–ի շարակարգ, ևն: Հեղինակ է լույսի արագության որոշման բազմաթիվ փորձերի (այդ թվում՝ *Մայքելսոնի փորձի*), սպեկտր. չափումների (նաև իր առաջարկած մետրի չափը՝ կադմիումի սպեկտրի կարմիր գծի ալիքի երկարությամբ արտահատված) և այլ ֆիզ. սարքերի ու փորձերի: Նոբելյան մրց. (1907):

ՄԱՅՔԵԼՍՈՆԻ ՓՈՐՁ, ապացուցել է լույսի արագության անկախությունը Երկրի շարժման ազդեցությունից (Ա. *Մայքելսոն*, 1887): Դաս. ֆիզիկայում Մ. փ. իր բացատրությունը չունեցավ. հարաբերականության տեսության մեջ հաշվարկման բոլոր համակարգերում լույսի արագության հաստատունությունն ընդունվում է որպես կանխադրույթ (պոստուլատ):

«ՄԱՅԿՐՈՍՈՖԹ» (Microsoft, < անգլ. Microcomputer Software – միկրոհամակարգիչների ծրագրային ապահովում), ամերիկ. կորպորացիա, որը հիմնադրել են (1975) Բիլ Գեյթսը և Պոլ Ալենը: Աշխում է ծրագր. ապահովում անհատ. համակարգիչների, խաղային կցորդների, գրպանի համակարգիչների, բջջային հեռախոսների և այլ սարքերի համար («Windows» ընտանիքի գործութային համակարգեր, «Microsoft Office» ընտանիքի գրասենյակ. կիրառություններ, սերվեր. կիրառությունների, խաղերի, մուլտիմեդիային արտադրանքի, ծրագրերի մշակման միջոցների լրակազմեր ևն): Գլխ. գրասենյակը ք. Ռենդմոնդում է (Սիեթլ ք–ի արվարձան):

ՄԱՆ (Mann) Թոմաս (1875–1955), գերմանացի գրող: Հ. *Սանի* եղբայրը, Կ. *Սանի* հայրը: Հեղինակ է «Բուդենբրոկներ: Մի ընտանիքի անկումը» (հ. 1–2, 1901, հայ.՝ 1986), «Կախարդական լեռը» (1924), Յ. Վ. Գյոթեի մասին «Լոտտան Վայմարում» (1939), «Դոկտոր Ֆաուստուս» (1947) և այլ վեպերի, աստվածաշնչ. թեմայով «Հովսեփը և նրա եղբայրները» (1933–43) քառերգության, «Տրիստան», «Տոնիո Կրեգեր» (երկուսն էլ՝ 1903), «Մարիոն և կախարդը» (1930) նովելների, «Ապոլիտիկ մարդու խորհրդածություններ» (1918) գրքի, նաև

գրաքննադատ., հրապարակախոս. երկերի, հոդվածների: Նորելյան մրց. (1929):

ՄԱՆ Կլաուս (1906–1949), գերմանացի գրող, լրագրող: Թ. *Մանի* որդին: «Մեֆիստոֆել» (1936) վեպում քննել է Գերմանիայում ֆաշիզմին «մեղսակից»՝ չդիմադրող մարդկանց թեման: «Ոլորանին» (անգլ., 1942, գերմ.՝ 1952) ինքնախոստովան. երկում ներկայացրել է Մանն ընտանիքի պատմությունը:

ՄԱՆ Հայնրիխ (1871–1950), գերմանացի գրող: Թ. *Մանի* եղբայրը: 1933-ից՝ Ֆրանսիայում, 1940-ից՝ ԱՄՆ-ում: Հեղինակ է «Ավետյաց երկիր» (1900) երգիծ., քննադատ., Գերմանիայի «բյուրգերյան» ժամանակաշրջանը պատկերող «Վարժապետ Ունրատը» (1905), «Կայսրություն» («Հպատակը», 1914, հրտ.՝ 1918, «Հքավորներ», 1917, «Գլուխը», 1925) եռերգության և այլ սոցիալ-բարոյախոս. վեպերի, «Հենրիխ IV-ի պատանեկությունը» (1935) և «Հենրիխ IV-ի հասունությունը» (1938) երկերգության, որտեղ ստեղծել է ֆանատիզմի դեմ պայքարող, կատարյալ միապետի կերպարը, հրապարակախոս. («Դարի տեսություն», 1946, ժող.), գրաքննադատ. հոդվածների, նաև նովելների, պիեսների:

ՄԱՆԱ, վաղ պետ. կազմավորում (մ. թ. ա. IX–VI դդ.) *Կապուտան* (Ուրմիա) լճի ավազանում: Առաջին տեղեկությունները մեզ են հասել մ. թ. ա. IX–VII դդ-ի ասորեստան. և ուրարտ. արձանագրություններում: Ընդգրկել է Նոր Շիրական (Պարսկաիայք) նահանգ-ի տարածքը և հարակից շրջանները: Ուսումնասիրողների (Ռ. Դայսոն, Ե. Պորադ, Է. Գրանտովսկի) կարծիքով՝ մանացիները ցեղակից էին Հայկ. լ-աշխարհի մյուս բնիկներին և էապես տարբեր իրենց արլ. ու հվ. դրացիներից՝ մարական, պարսկ. և սեմ. ցեղերից: Տես *Ասբանազյան թագավորություն*, *Վանի թագավորություն*:

ՄԱՆԱԳՈՒԱ (Managua), Նիկարագուայի Հանրապետության մայրաքաղաքը (1858-ից)՝ համանուն լճի ափին, Մ. դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 927 հզ. (արվարձաններով՝ 1,84 մլն, 2010): Խոշոր տրանսպորտ. հանգույց է: Գործում են համալսարաններ, թատրոններ և թանգարաններ: Հիմնադրել են իսպանացիները XVI դ-ում, 1846-ին ստացել է քաղաքի կարգավիճակ: Մեծապես տուժել է 1972-ի երկրաշարժից:

ՄԱՆԱԶԿԵՐՏ, **Մալազկերտ**, գվոկ Արմ. Հայաստանի Բիթլիսի նահանգ-ի Մուշ գավառում՝ Արածանիի (Արլ. Եփրատ) վերին հոսանքի շրջանում: Համապատասխանում է Տուրուբերան նահանգ-ի *Ապահունիք*, մասամբ՝ *Հարք* գավ-ներին: Կենտրոնը՝ *Մանազկերտ* գք: XX դ-ի սկզբին ունեցել է 130 բնակավայր: Մեծ եղեռնի ժամանակ հայերը վերջնականապես լքել են (1918-ին) բնօրրանը: Ներկայում Մ. գվոկ է Թուրքիայի Մուշ նահանգ-ում:

ՄԱՆԱԶԿԵՐՏ, գք Արմ. Հայաստանի Բիթլիսի նահանգ-ի Մուշ գավ-ում, համանուն գվոկ-ի կենտրոնը: Ըստ ավանդության՝ հիմնադրել է Հայկ Նահապետի որդի Մանավազը (այստեղից՝ Մ. անվանումը): Մինչև IV դ. Մանավազյանների աթոռանիստն էր: Մ-ի մոտ է տեղի ունեցել *Մանազկերտի ճակատամարտը*: XVI դ-ում գք նվաճել է Օսմ. կայսրությունը: Ըստ Մշո առաջնորդարանի տվյալների՝ 1915-ին ունեցել է շուրջ 1000 հայ բնակիչ, որոնց մի մասը կոտորվել է, մյուսները՝ տեղահանվել:

ՄԱՆԱԶԿԵՐՏԻ ԴԱՇՏ, միջինլեռն. գոգավորություն Հայկ. լ-աշխարհում՝ Արածանի գետի վերին հոսանքի ավազանում: Հիմնականում համընկնում է Մեծ Հայքի Տուրուբերան նահանգ-ի Դալար, Ապահունիք, Հարք գավ-ների տարածքին: Երկ.՝ մոտ 125 *կմ*, լայն.՝ 60 *կմ*, բարձր.՝ 1500–1700 *մ*: Կլիման՝ չափավոր ցամաքային: Հունվ-ի միջին ջերմաստիճանը –5-ից մինչև 6 է, հուլիսինը՝ 18–20°C, տարեկան տեղումները՝ 400–500 *մմ*: Գլխ. գետը *Արածանին* է: Գետահովիտներում և նախալեռն. ձորակներում հանդիպում են նոսրանատառներ՝ կաղնու, գիհու, սոճու պուրակներով, մասրենու, սզնու, ցաքիի մացառուտներով:

ՄԱՆԱԶԿԵՐՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1071, բյուզանդացիների և սելջուկ-թուրքերի զորքերի միջև օգոստ. 19-ին *Մանազկերտի* մոտ: Ճակատամարտին մասնակցել են նաև հայկ. զորամասերը, սակայն Բյուզանդիայի կայսր Ռոմանոս IV Դիոգենեսի (1068–71) վիրավորվելուց և գերվելուց հետո բյուզ. բանակը պարտվել է: Մ. ճ. ճակատագր. նշանակություն է ունեցել Բյուզանդիայի և Հայաստանի համար:

ՄԱՆԱԿԵՐՏ, **Մանկերտ**, բերդ *Վասպուրական* նահանգ-ի Ռշտունիք գավ-ում՝ Վանա լճի հվ. ափի հրվանդանի վրա (Աղթամար կղզու դիմաց): Ըստ ավանդության՝ հայոց հվ. զորաթևի հրամ. իշխան Մանաճիհիր Ռշտունին, ձերբակալելով քրիստոնյա քարոզիչներին (*Հակոր Մծբնացուն* և կողմնակիցներին), նրանց Մ-ի բերդապարսպից նետել է Վանա լիճը (կոչվել է նաև Մանաճիրի բերդ):

ՄԱՆԱԿՈՎ Գենադի Միխայլովիչ (ծ. 1950), ԽՍՀՄ տիեզերագնաց-օդաչու (1991): ԽՄ հերոս (1991): Թռել է «Սոյուզ-ՏՄ-10»-ով և «Միր» ուղեծրահամալիրով (1990-ի օգոստ.), «Սոյուզ -ՏՄ-16»-ով և «Միր» ուղեծրահամալիրով (1993-ի հունիս–օգոստ.):

ՄԱՆԱՆԱ, գազպեն, ցողամեղր, 1. որոշ ծառատեսակների (հացենի, կաղնի ևն) վրա գոյացող քաղցրահամ նյութ, որը հոսում է կեղևի վնասվածքներից: Մ. առատորեն լինում է Սուշի դաշտում, Սասունում՝ դեղձենու, ծիրանենու ծաղկափոշուց, որը, նստելով ծառերի վրա, դառնում է մեղրանման զանգված. այն հավաքել, եփել և օգտագործել են մեղրի, շաքարի փոխարեն: Ժողդ-ը Մ. անվանել է նաև «Սր Կարապետի հալվա»: Տարածված է «Երկնքից Մ. է իջնում» արտահայտությունը՝ որպես առատության խորհրդանշան: 2. Քարաքոսերի մի քանի տեսակներ (Հվ-արլ. Եվրոպա, Հս-արմ. Ասիա և Հվ. Աֆրիկա): Կնձիկների տեսք ունեն (տրամագիծը՝ 4 *սմ*), որոնք քամու միջոցով տեղափոխվում են մեծ հեռ-յուններ:

«ՄԱՆԱՆԱ», երգիծ. շաբաթաթերթ (1913–14, Կ. Պոլիս): Խմբ.՝ Երվանդ Օտյան:

ՄԱՆԱՆԱՂԻ, **Մանաղի**, գվո Բարձր Հայք նահանգ-ում՝ Եփրատի Մանանաղի (այժմ՝ Թուզլու) վտակի ավազանում: XI դ-ում եղել է *Թոնդրակյան շարժման* կենտրոններից: Կոչվել է նաև (ուշ միջնադարում) Լակզո ձոր, հետագայում՝ Վերին Դերջան: Հիշատակվում են Մ-ի Վժան, Շիրնի, Մմբատաբերդ բք-ները, Ջերմ, Կաշե և այլ բնակավայրերը:

ՄԱՆԱՆԴՅԱՆ Հակոբ Համազասպի (1873–1952), պատմաբան, բանասեր, աղբյուրագետ: ԽՍՀՄ (1939) և ՀԽՍՀ (1943) ԳԱ-ների ակադ.: ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1935): ԵՊՀ հիմնադիրներից է, 1921–22-ին՝ ռեկտոր: Աշխ-ները վերաբերում են հայոց հին և միջնադար. պատմությանն ու բանասիրությանը, պատմ. աշխարհագրությանը, չափագիտ-յանն ու վիմագրությանը, մշակույթին: Դրանք կարևոր են նաև Այսրկովկասի ու Մերձ. Արևելքի երկրների պատմության ուսումնասիրման համար: Մ. բացահայտել է հայոց գրերի պատմության հետ կապված առեղծվածներ. եզրակացրել է, որ մաշտոցյան գրերն ստեղծվել են 392–393-ի ընթացքում («Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար», ռուս., 1941): Երևանում 1977–85-ին հրատարակվել են Մ-ի «Երկեր» (հ. 1– 6), 2010-ին՝ 7-րդը:

ՄԱՆԱՆԵԽ (Sinapis), **խարտալ, դաշտային մանանեխի, ախունու**, կաղամբազգիների ընտանիքի, նաև կաղամբ ցեղի որոշ բույսերի ընդհ. անվանումը: Հայտնի է 7–10 տեսակ, ՀՀ-ում՝ 1՝ մշակովի Մ.՝ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի և այլ մարզերում, աղբոտում է ցանքերը: Մ-ի սերմերից ստանում են եթերայուղեր, օգտագործում են բժշկության մեջ, բուս. յուղը՝ սննդի (հացաթխման, հրուշակեղենի, պահածոյի) արտադր-յան մեջ: Մ-ի քուսպի փոշուց պատրաստում են սեղանի Մ.: Մեղրատու է:

ՄԱՆԱՍ Էդգար (1875–1964), կոմպոզիտոր, դիրիժոր, երաժշտագետ: 1905-ից՝ «Գաղիա» երգչախմբի (Կ. Պոլիս) ղեկ., հանդես է եկել համերգներով (ֆրանս. կառ-յան «Ակադեմիայի պսակավոր» տիտղոս): Եղել է նաև «Քնար», «Արվեստասեր» միությունների երգչախմբերի, նվագախմբերի ղեկ.: Հեղինակ է լար. կվարտետի, «Սիմֆոնիկ ալեգրո»-ի, «Արևելյան ռապսոդիա»-ի, բազմաձայն պատարագի ևն: Հրատարակվել է Մ-ի «Իշխանաց կղզիներ» դաշնամուր. սյուիտների ժող-ը (1927, Փարիզ):

«ՄԱՆԱՍ», ղրղզ ժողդ-ի էպոսը: «Մ.»-ում պատմվում է դյուցազն Մանասի և նրա ժառանգների քաջագործությունների մասին՝ հանուն իրենց հայրենիքի պաշտպյան: Առաջին գրառումներն արվել են XIX դ-ի 2-րդ կեսին:

ՄԱՆԱՍԱՐՅԱՆ Գրիգոր Հենրիկի (ծ. 1956), ճարտարագետ-մեխանիկոս: Տեխ. գիտ. դ-ր (1999): Աշխ-ները վերաբերում են թրթռուրավոր և անվավոր մեքենաների արագացված փորձարկումներին, թրթռուրավոր մեքենաների ընթացքի կայունացման ապահովմանը և նոր շարժահաղորդների մշակմանը:

ՄԱՆԱՍԵ, նկարիչների ընտանիք: Ապրել և ստեղծագործել են Կ. Պոլսում (XVII դ-ի վերջ–1920-ական թթ.): Թուրք. արվ-ում սկզբնավորել են հաստոց. նկարչությունը, առաջինն ստեղծել դիմանկարներ, երփնագրեր, նպաստել հայ նոր կերպարվ-ի ձևավորմանը: **Բարսեղ Մ.** (XVII դ-ի վերջ–XVIII դ-ի սկիզբ), սուլթան Ահմեդ Գ-ի պալատ. նկարիչը, հեղինակ է մանրանկար-դիմանկարների: Որդին՝ **Ռաֆայել Մ.** (XVIII դ-ի 1-ին կես), գեղանկարիչ, ճարտ.: Հեղինակ է «Երկու երիտասարդ», «Արտեմիս», «Աստղիկ աստվածուհին» նկարների, նաև սրբապատկերների (Կ. Պոլսի հայկ. եկեղեցիներում): Պալատ. նկարիչներ էին Ռաֆայելի որդիները՝ **Մանասը** և **Զենոբը** (XVIII դ-ի 2-րդ կես): Ռաֆայել Մ-ի թոռը՝ **Զենոբը** (XVIII դ-ի վերջ–XIX դ-ի սկիզբ), նաև դիվանագետ էր, թարգմանիչ: Վեր-

ջինիս որդիներն ստեղծագործել են XIX դ–ում. **Ալեքսանդրն** ավարտել է Վիեննայի գեղարվ–ի ակադ–ը, **Գասպարը** 32 տարի Վիեննայում Թուրքիայի դեսպանատան 1–ին քարտուղարն էր, **Մաքսուդը** սովորել է Իտալիայում, **Ռուբենը** եղել է Թուրքիայի դեսպանատան քարտուղարը Փարիզում, 1869–ից՝ Թուրքիայի հյուպատոսը Միլանում: Հեղինակ է մանրանկար–դիմանկարների: Ծոռը՝ **Սեպուհը** (1816–1889), 1858–ին՝ Շվեդիայում, ապա 30 տարի Փարիզում Թուրքիայի դեսպանատան 1–ին քարտուղարն էր. հեղինակ է դիմանկարների: Տոհմի նկարիչներից է նաև ***Ժոզեֆ Մկրտչի Մ.*** (1835–1916), եղել է դիվանագետ, դիմանկարիչ:

ՄԱՆԱՍԵՍ (Manasses), **Մանասիա**, Կոնստանտին (մոտ 1130–մոտ 1187), բյուզանդացի բանաստեղծ: «Համառոտ ժամանակագրություն» (մինչև 1153–ը) չափածո երկն ընդգրկում է համաշխ. պատմության իրադարձություններն աշխարհի արարումից մինչև 1081–ը: Հեղինակ է նաև «Վիպակ Արիստանդրի և Կալիֆեի մասին» (9 գիրք, մոտ 1160, պահպանվել է մասամբ) չափածո սիրավեպի և այլ գործերի:

ՄԱՆԱՍԵՐՅԱՆ Գրիգոր Հենրիկի (ծ. 1956), ճարտարագետ–մեխանիկոս: Տեխ. գիտ. դ–ր (1999): Աշխ–ները վերաբերում են թրթուրավոր և անվավոր մեքենաների արագացված փորձարկումներին, առաջինների ընթացքի կայունացման ապահովմանը և շարժահաղորդակների մշակմանը:

ՄԱՆԱՍԵՐՅԱՆ Թաթուլ Նորայրի (ծ. 1960), տնտեսագետ, քաղ. գործիչ: Տնտեսագիտ. դ–ր (2001), պրոֆ. (1993): Նորայր ***Մանասերյանի*** որդին: 2003–ից՝ «Այլընտրանք» ռազմավար. կենտրոնի հիմնադիր–ղեկ.: Աշխ–ները վերաբերում են Հայաստանի մրցակցային առավելությունների և իրացման հեռանկարների հարցերին:

ՄԱՆԱՍԵՐՅԱՆ Լևոն Հայրապետի (ծ. 1925), գրաֆիկ, նկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (1983): Պրոֆ. (2006): Հեղինակ է վիմագրությունների («Դանթեական առասպել»՝ ըստ Ե. Չարենցի, նկարաշար, «Լիլիթ», «Անանդան և մահը», երկուսն էլ՝ ըստ Ա. Իսահակյանի, «Երազանք» ևն), գեղանկարչ. թեմատիկ կոմպոզիցիաների, բնանկարների («Աշուն», «Կեսօր» ևն), դիմանկարների («Սայաթ–Նովա» ևն), նաև նատյուրմորտների, գրքերի նկարազարդումների:

Հանրապետ. մրցույթի 1–ին (1961), ՀԽՍՀ ՄՆ 2–րդ (1978) մրց–ներ, ԵՃՇՊՀ ոսկե մեդալ (2009):

ՄԱՆԱՍԵՐՅԱՆ Նինա Հուսիկի (ծ. 1945), կենդանաբան: Կենսբ. գիտ. դ–ր (2008): Աշխ–ները վերաբերում են հնակենդր–յանը, կաթնասունների կարգաբանությանը և ձևաբանությանը, ընտանի կենդանիների ծագմանն ու էվոլյուցիային, բրածո կենդանիների ոսկորների վրա հայտնաբերված հիվանդություններին ևն:

ՄԱՆԱՍԵՐՅԱՆ Նորայր Մարգարի (1927–2013), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1971), պրոֆ. (1983): Թաթուլ ***Մանասերյանի*** հայրը: Աշխ–ները վերաբերում են հող. հարաբերությունների, գղտ–յան վերարտադր–յան, ուրբանիզացիայի և լեռն. շրջանների սոցիալ–տնտ. հարցերին:

ՄԱՆԱՍԵՐՅԱՆ Ռուբեն Լևոնի (ծ. 1956), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1998): Աշխ–ները վերաբերում են Հին Հայաստանի և Մերձ. Արևելքում միջազգ. հարաբերությունների (մ. թ. ա. IV դ–մ. թ. IV դ.) պատմությանը («Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ...», 1987, «Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ», 1997, ևն):

ՄԱՆԱՍՅԱՆ Ալբերտ Վաղարշակի (1937–2011), անասնաբույժ: Անասնաբուժ. գիտ. դ–ր (1992), պրոֆ. (1993): ՀՀ կենդանաբուժ. ԳԱ հիմնադիր–նախագահ (2004): Աշխ–ները վերաբերում են տավարի մարսող. և շնչառ. համակարգերի ախտաբանության խնդիրներին: Առաջարկել է բուժման ևերոզոլ. եղանակ և սարք (ԽՍՀՄ ԺՏՆՅ արծաթե մեդալ, 1989): ՀԱԱՀ ոսկե մեդալ (2006):

ՄԱՆԱՍՅԱՆ Ալեքսանդր Հովհաննեսի (1910–1995), անասնաբույժ: Անասնաբուժ. գիտ. դ–ր (1954), պրոֆ. (1955): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1967): Աշխ–ները վերաբերում են կենդանիների հղիության, անպտղության պատճառագիտ–յան, սերմնահեղուկի մանրէային աղտոտվածության, կաթնագեղձի հիվանդություններին: Առաջարկել է գինեկոլոգ. տարբեր հիվանդությունների բուժման եղանակներ և միջոցներ:

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան:

ՄԱՆԱՍՅԱՆ Ալեքսանդր Սարգսի (ծ. 1940), փիլ.: Փիլ. գիտ. դ–ր (1985), պրոֆ. (1989): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006): «Ընդդեմ իրավական կամայականության» իրավապաշտպան ՀԿ հիմնադիր–նախագահ (1991–95): Աշխ–ները վերաբերում են իմացաբանության, գիտ–յան փիլ–յան ու մեթոդաբանության, կոնֆլիկտաբանության հարցերին: ՀՓԱ անդամ (1994): ԷՂՀ «Վաչագան Բարեպաշտ» մեդալ (2000):

ՄԱՆԱՍՅԱՆ Գևորգ Յոլակի (ծ. 1953), կոմպոզիտոր, դաշնակահար, դիրիժոր: 1978–98–ին (տարբեր տարիների)՝ Երևանի Թ. Ալթունյանի անվ. երգի–պարի անսամբլի գործիք. և երաժշտ. մասերի ղեկ., Ե. Սահառունու անվ. ժող. երգի–պարի, ՀՀ հեռուստառադիոպետկոմի Ա. Մերանգուլյանի անվ. ժող. գործիքների, «Հին Երևան» վոկալ–գործիք., 1989–93–ին և 2000–ից՝ Հայաստանի գուսան. և ժող. երգի անսամբլների գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: Հեղինակ է դաշնամուր. գործերի, պար. մեղեդիների, երգերի, Եվրոպայի թեթև ատլետիկայի մրցումների օրհներգի (1–ին մրց.՝ 2005) ևն:

ՀՀ «Մովսես Խորենացի» (2013), ՄՆ ոսկե (2008), մեդալներ:

ՄԱՆԱՍՅԱՆ Իսահակ Մարկոսի (1917–1974), ԽՄ հերոս (1940): Հերոսի կոչման արժանացել է խորհրդա–ֆինն. (1939–40) պատերազմում իր վաշտով Կիրկ բարձունքը գրավելու և պահելու համար: Մասնակցել է նաև ՀՄՊ–ին: Զորացրվելուց (1947) հետո աշխատել է Բաքվում:

ՄԱՆԱՍՅԱՆ Հեղինե Գրիգորի (ծ. 1950), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1996): «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն–Հայաստան»–ի գործադիր տնօրեն (2002–ից): Աշխ–ները վերաբերում են տնտ. աճի ու զարգացման, անցումային տնտ–յան, աշխատաշուկայի, աղքատության և կրթության, կորպորատիվ կառավարման ստվերային տնտ–յան հարցերին:

ՄԱՆԱՍՅԱՆ Մաքսիմ Գառնիկի (ծ. 1960), աշխարհագետ: Աշխարհագր. գիտ. դ–ր (2009), պրոֆ. (2011): «Հայք» տարածաշրջ. կենտր. ՀԿ հիմնադիր–տնօրեն (2001–ից): Աշխ–ները վերաբերում են բնակչության, սոցիալ. աշխարհագրության, Երևանի և ՀՀ մարզերի սոցիալ–տնտ. զարգացման հարցերին:

ՄԱՆԱՍՅԱՆ Սամվել Մեսրոպի (1907–1979), քանդ.: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1967): Ստեղծագործել է հիմնականում մոնումենտալ քանդ–յան բնագավառում («Մայր Հայրենիք», 1945, «Գարուն», 1971, քանդակներ, Ս. Մանուկյանի դիմաքանդակը, 1952, ևն): Սարդարապատի հերոսամարտին նվիրված հուշահամալիրի համահեղինակ:

ՄԱՆԱՎԱԶՅԱՆՆԵՐ, նախարար. տոհմ Արշակունյաց Հայաստանում: Մ. են կոչվել իրենց նախնու՝ Մանավազի (***Հայկի*** որդու) անունով: Ժառանգ. կալվածքն էր Հարք գվռ–ը՝ Մանավազակերտ (***Մանազկերտ***) կենտրոնով: 330–ական թթ–ին կռվել են ***Բզնունիների*** և ***Որդունիների*** դեմ: Չկարողանալով հաշտեցնել կողմերին՝ Հայոց թագավորի հրամանով սպարապետ Վաչե Մամիկոնյանը ընաջնջել է նրանց. Հարք գվռ–ը տրվել է ***Աղրիանոներին***:

ՄԱՆԱՐՅԱՆ Արման Քրիստափորի (1929–2016), կինոռեժ., սցենարիստ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1975): Երվանդ ***Մանարյանի*** եղբայրը: Հայրենադարձել է 1946–ին: 1962–ից՝ Հայֆիլմի ռեժ. («Տժվժիկ»՝ ըստ Ատրպետի, կարճամետրաժ, 1961, «Կարինե»՝ ըստ Տ. Չուխաճյանի «Լերլերիջի» օպերետի, 1967, «Հեղնար աղբյուր»՝ ըստ Մ. Արմենի, 1970, «Ընկեր Փանջունի»՝ ըստ Ե. Օտյանի, 1993, բոլորը՝ գեղ., «Հայելի», 1981, «Սասնա ծռեր», 2009, երկուսն էլ՝ մուլտֆիլմ, «Արցախ», 1989, վավերագր., ևն): Հեղինակ է նաև սցենարների:

Միջազգ. կփ բրոնզե և արծաթե մեդալներ (1996, ԱՄՆ):

ՄԱՆԱՐՅԱՆ Երվանդ Քրիստափորի (ծ. 1924), ռեժ., դերասան: ՀՀ վաստ. արտիստ (2003): Արման ***Մանարյանի*** եղբայրը: Հայրենադարձել է 1946–ին: 1952–53–ին՝ ԵԵԿԹ դերասան, 1957–85–ին (ընդհատումներով)՝ ԵՏԹ, 1951–96–ին (ընդհատումներով)՝ Գորիսի պետ. թատրոնի գլխ. ռեժ., 1968–78–ին՝ «Երևան» կինոստուդիայի խմբ., ռեժ., 1988–ից՝ «Ագուլիս» տիկնիկ. թատրոն–ստուդիայի, 2007–ից՝ Կիևի տիկնիկ. հայկ. թատրոնի հիմնադիր–գեղ. ղեկ.: Բեմադրել է «Անհաղթ պլորը», «Հազարան բլբուլ» (երկուսն էլ՝ ըստ Հ. Թումանյանի), Մ–ի «Ժամանակ էն ժամանակն էր» և այլ պիեսներ: Նկարահանվել է կինոյում («Կարինե», 1967, «Հարսնացու հյուսիսից», «Քաոս», երկուսն էլ՝ 1975, ևն): Մի շարք («Տժվժիկ», 1961, «Տերն ու ծառան», 1962, ևն) ֆիլմերի սցենարիստն է:

«Բարեկամության ջահ» միջազգ. փառատոնի (1987, Ջեստաֆոն, Վրաստան), ՀԹԳՄ «Արտավազդ» (2005) մրց–ներ:

ՄԱՆԳԱԼԻՑՅԱՆ ԽՈՋԵՐ, ***մանգալից***, ճարպատու խոզերի ցեղ: Ստացվել է Բալկանյան թ–կղզում՝ տեղ. և ասիական խոզերի տրամախաչումից: Վարազների կ. զ.՝ 160–180, մերուններինը՝ 120–150 *կգ*: Պտղատվությունը՝ 6–8 խոճկոր: ՀՀ ներմուծվել է 1948–ին, օգտագործվել անտառալեռն. շրջանների տեղ. խոզերի բարելավման համար:

ՄԱՆԳԱՂԱԹԵՎՆԵՐ (Apodidae), մանգաղաթևանմանների կարգի թռչունների ընտանիք: Հայտնի է 22 տեսակ, ՀՀ–ում՝ 2՝ սև և սպիտակափոշ Մ.: Փայլուն փետրավորմամբ, վառ կարմիր կատարով, երկար, երկատված ու ծայրերը կեռված պոչով

թռչուններ են: Մնվում են միջատներով, որոնց որսում են թռիչքի ժամանակ:

ՄԱՆԳԱՆ (Manganum), Mn, տարրերի պարբեր. համակարգի VII խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 25, ա. զ.՝ 54,9380: Անվանումը՝ գերմ. Manganez – մանգանի հանքաքար բառից: Արծաթասպիտակավուն, թեթև, ամուր մետաղ է, խտ.՝ 7,44 *գ/սմ*^{3}, $t_{հալ.}$՝ 1244 ºC: Հայտնի միներալներն են պիրոլյուզիտը, մանգանիտը, հաուսմանիտը ևն: Հողում, լճերում, ճահիճներում առաջացնում է երկաթամանգանային կուտակումներ. խոշոր կուտակումներ են հայտնաբերվել օվկ-ների հատակում: Քիմիապես ակտիվ մետաղ է: Մ-ի և երկաթի (ֆեռոմանգանային) ու սիլիցիումի (սիլիկամանգանային) համաձուլվածքները կիրառվում են ռելսերի և կառուցվածք. պողպատի արտադր-յան մեջ, որոնցով լեգիրում են ալյումինի, մագնեզիումի և պղնձի հիմքով համաձուլվածքները:

ՄԱՆԳԱՆԻԴ, հիդրօքսիդների խմբի միներալ՝ MnO (OH): Խառնուրդների ձևով պարունակում է SiO_2, Fe_2O_3 ևն: Առաջացնում է նուրբ բյուրեղ., օոլիտ., հատիկավոր ագրեգատներ ևն: Մուգ գորշից սև է, փայլը՝ կիսամետաղ.: Կարծր.՝ 4, խտ.՝ 4300 *կգ/սմ*^{3}: Մանգանի կարևոր հանքայնություն է:

ՄԱՆԳԱՆՈ (Mangano) Սիլվանա (1930–1989), իտալացի դերասանուհի: 1948-ից նկարահանվել է կինոյում («Դառը բրինձ», «Նեապոլի ոսկին», «Մարդիկ և գայլեր», «Մահ Վենետիկում», «Ուլիս», «Ընտանեկան դիմանկար ինտերիերում», «Դյուռա», «Սև աչքեր», «Ավազաբլուր» ևն):

ՄԱՆԳԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒՄՔՅՈՒՆՆԵՐ, մետաղօրգ. միացություններ, որոնցում մանգանի ատոմն անմիջականորեն միացած է ածխածնի ատոմին: $Mn(CO)_3(C_5H_5)$-ը և նրա հոմոլոգը կիրառում են որպես արդյունավետ և քիչ թունավոր (քան քառաէթիլկապարը) հակաճայթյուն. հավելանյութ բենզինների համար:

ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ Հենրի Վիլենի (1947–2003), դիրիժոր: 1980–87-ին՝ ՀՀ ժող. գործիքների նվագախմբի դիրիժոր (1987-ից՝ գեղ. ղեկ.), 1996-ին՝ Թեհրանի «Արարատ» ժող. և էստրադ. վոկալ-գործիք. խմբի ղեկ.: Հեղինակ է երգերի, նվագախմբային երկերի, մշակել է ժող. և աշուղ. երգեր: «Մայիսյան խաղեր» միջազգ. փառատոնի (արծաթե մեդալ, Վիսբադեն, Գերմանիա), «Բաբելոնյան փառատոնի» (Մեծ մրց., Իրաք), ժող. գործիքների նվագախմբերի (Ֆրանսիա), «Սայաթ-Նովա» համահայկ. երգի (1-ին մրց.՝ 2000, Երևան) փառատոների դափնեկիր:

ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ Ռաֆայել Արամի (1927–1997), դիրիժոր: ՀՀ ժող. արտիստ (1979): ԵՊԿ պրոֆ. (1977): 1966–90-ին (ընդմիջումով)՝ Հայաստանի հեռուստառադիոյի սիմֆ. նվագախմբի (1969-ից՝ գլխ. դիրիժոր, 1974-ից՝ նաև գեղ. ղեկ.), դիրիժոր: 1981-ին վերականգնել է կոնսերվատորիային կից օպեր. ստուդիան (մինչև 1991-ը՝ սիմֆ. նվագախմբի ղեկ.):

ՀԽՍՀ Պետ. մրց. (1983):

ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ Տիգրան Սարգսի (ծ. 1959), նկարիչ, գրաֆիկ: Հեղինակ է գեղանկարչ. գործերի («Հանդիպում», 2004, «Հայկական մոտիվ», 2006, «Աղոթք», 2012, ևն), դիմանկարների («Էդիտայի դիմանկարը», 1984, «Աննա Պոպովիչի դիմանկարը», 1987, ևն), գրքերի նկարազարդումների (Ն. Ն. Նոսովի «Անգետիկի և նրա ընկերների արկածները», 1999, Վ. Արամյանի «Երանոս Կոմանցի», 1989, «Մինչև հոգիների աճուրդը», անգլ., 2008, գրաֆիկ. վեպ, սցենարի հեղինակ՝ Մ., ևն):

ՄԱՆԳԵՆԻ (Mangifera), **մանգո, ինդկադեղձի**, ախտորազգիների ընտանիքի մշտադալար ծառերի ցեղ: Հայտնի է 40 տեսակ՝ Հվ-արլ. Ասիայում: Կարևոր պտղատու տեսակներից է ինդ. Մ.: Բազմաթիվ տեսակների պտուղներն օգտագործում են սննդի մեջ:

ՄԱՆԳԼՅԱՑ ՓՈՐ, գվո *Գուգարք* նահգում: Վրաց. աղբյուրներում կոչվել է «Մանգլիսիս խևի»:

ՄԱՆԳՈՒ, Մունքե (1208–1259), *Մոնղոլական կայսրության* 4-րդ խանը՝ 1251-ից: *Չինգիս խանի* թոռը: Նվաճել է Իրանը և սկսել Հվ. Չինաստանի հնազանդեցումը: Կիլիկիայի հայոց թագավոր Հեթում Ա-ն Կարակորումում Մ-ի հետ կնքել է (1254) *Հայ-մոնղոլական դաշինքը*:

ՄԱՆԳՈՒՍՏՆԵՐ (Herpestes), վիվերների ընտանիքի կաթնասունների սեռ: Մարմնի երկ.՝ 23–64, պոչինը՝ մինչև 50 *սմ*: Հայտնի է 14 տեսակ՝ Աֆրիկայում, Փոքր, Առաջավոր և Հվ. Ասիայում, Հվ-արմ. Եվրոպայում: Կլիմայավարժեցվել են Վեստ Ինդիայում և Հավայան կղզիներում: Մնվում են հիմնականում կրծողներով և օձերով: Հեշտությամբ ընտելանում են: Ամենախոշոր ներկայացուցիչն իխնևմոնն է:

ՄԱՆԴԱԼՅԱՆ Թադևոս Գեղամի (1901–1938), կուս. և պետ. գործիչ: Մասնակցել է Մայիսյան ապստամբությանը (1920): ՀԽՍՀ բանգյուղտեսչության ժողկոմ, ՀԿԿ ԿԿ-ի վերստուգիչ հանձնաժողովի նախագահ և ՀԽՍՀ ԺԿԽ նախագահի տեղակալ (1928–36): Մասնակցել է Իսպանիայի քաղաքաց. պատերազմին (1936–38): Աշխ-ները վերաբերում են միջազգ. բանվ. և ազգ-ազատագր. շարժումներին:

ՄԱՆԴԱԼՅԱՆ Ռոլանդ Աշոտի (1933–2010), երկրաբան: Երկրբ-հնքբ. գիտ. դ-ր (1990): Աշխ-ները վերաբերում են ՀՀ տարածքի յուրայի, ստորին կավճի նստվածք. ու հրաբխանստվածք. ֆորմացիաների քարագիտ-յանը, հնաաշխարհագրությանը և ոչ մետաղ. օգտ. հանածոներին:

ՄԱՆԴԱՂ, նեխուրազգիների ընտանիքի երկամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 4 տեսակ, ՀՀ-ում՝ 2՝ տարածված գրեթե բոլոր մարզերում: Օգտագործում են սննդի մեջ:

ՄԱՆԴԱԿՈՒՆԻ Վաղինակ Քրիստափորի (1929–1990), նկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (1971): Հեղինակ է հաստոց. գրաֆիկ. գործերի, գրքի նկարազարդումների և ձևավորումների (Շ. Պեռոյի «Հեքիաթներ», 1980, Վ. Այգեկցու «Աղվեսագիրք», 1981, Հ. Թումանյանի «Հեքիաթներ», 1925, ևն), պլակատների:

ՄԱՆԴԱԿՈՒՆԻՆԵՐ, նախարար. տոհմ Հին Հայաստանում: Ըստ ավանդության՝ անունն առաջացել է տոհմի հիմնադիր Մանդակի անունից, որին *Վաղարշակ* թագավորը շնորհել է նախարարի աստիճան: *Տրդատ Գ Մեծի* գահակալումից հետո սպարապետությունն ստանձնել է Արտավազդ Մանդակունին: V դ-ում Մ. տիրել են *Արշամունիք* գվո-ին: Նույն դարի նշանավոր դեմքերից էր Սբ *Հովհաննես Ա Մանդակունի* կաթողիկոսը:

ՄԱՆԴԱՐԻՆԵՆԻ (Citrus reticulata), սատապազգիների ընտանիքի ցիտրուս ցեղի մշտադալար ծառերի և թփերի տեսակ: Բարձր.՝ մինչև 3 *մ*: Պտուղների զանգվածը՝ 60–80 *գ*: Պտղահյութը պարունակում է 2,87–10,5 % շաքարներ, 0,95–1 % թթուներ (կիտրոնաթթու), C վիտամին ևն: Կեղևը հարուստ է պեկտին. նյութերով, եթերայուղերով և գլիկոզիդներով:

ՄԱՆԴԵԼ (Mundell) Ռոբերտ Ալեքսանդր (ծ. 1932), կանադացի տնտեսագետ: Աշխ-ները վերաբերում են միջազգ. արժութ. հարաբերությունների խնդիրներին: Նոբելյան մրց. (1999):

ՄԱՆԴԵԼՇՏԱՄ Անդրեյ Նիկոլաևիչ (1869–1939), ռուս դիվանագետ, իրավաբան, պատմաբան: Միջազգ. իրավունքի դ-ր, պրոֆ.: 1898–1915-ին Թուրքիայում Ռուսաստանի դեսպանության (Կ. Պոլիս) 1-ին թարգմանն էր: 1912–14-ին գործուն մասնակցություն է ունեցել Արմ. Հայաստանում բարենորոգումների ծրագրերի նախապատրաստմանը. կազմել է Ռուս. կառ-յան ներկայացրած բարեփոխումների նախագիծը: «Օսմանյան կայսրության ճակատագիրը» (ֆրանս., 1917) աշխ-յան մեջ նկարագրել է Թուրքիայում հայերի ջարդերն ու տեղահանությունը, բերել բազում վկայություններ ու արժանահավատ փաստեր:

ՄԱՆԴԵԼՇՏԱՄ Լեոնիդ Իսաակովիչ (1879–1944), ռուս. ֆիզիկոս: ԽՍՀՄ-ում ռադիոֆիզիկայի գիտ. դպրոցի հիմնադիրներից: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1929): Ս. Լ. *Մանդելշտամի* հայրը: 1918-ին կանխագուշակել է լույսի ցրումը խտության ադիաբատ. ֆլուկտուացիաներից (Մանդելշտամ – Բրիլուենի ցրում): 1928-ին Գ. Ս. Լանդսբերգի հետ (Չ. Ռամանից և Կ. Կրիշնանից անկախ) հայտնաբերել է լույսի համակցական ցրումը: Ն. Դ. Պապալեկսիի հետ հիմնարար հետազոտություններ է կատարել ոչ գծային տատանումների և ալիքների բնագավառում, մշակել էլ. տատանումների գրգռման հարաչափ. մեթոդ, առաջարկել հեռ-յունների չափման ռադիոինտերֆերենցիայի մեթոդ:

Լենինյան (1931), ԽՍՀՄ Պետ. (1942) մրց-ներ:

ՄԱՆԴԵԼՇՏԱՄ Նադեժդա Յակովլևնա (1899–1980), հրեա ռուսագիր գրող, հուշագիր: Օ. Է. *Մանդելշտամի* կինը: «Հուշեր»-ում (1970) պատկերել է ամուսնու ողբերգ. ճակատագիրը, «Երկրորդ գիրք»-ում (1972)՝ հոգեբ. և ստեղծագործ. դիմանկարը, 1920–30-ական թթ-ի սկզբի գր. միջավայրը ևն. նկարագրել է նաև Օ. Մանդելշտամի հետ այցը Ղարաբաղ, Շուշիի ջարդերի հետևանքներն ու իր տեսածները: Հրատարակվել է նաև «Գիրք երրորդ» (1987) հուշագրությունը:

ՄԱՆԴԵԼՇՏԱՄ Սերգեյ Լեոնիդովիչ (1910–1990), ռուս. ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1979): Լ. Ի. *Մանդելշտամի* որդին: Աշխ-ները վերաբերում են ատոմ. սպեկտրադիտմանը, սպեկտր. վերլուծությանը, պլազմայի սպեկտրաչափությանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1977):

ՄԱՆԴԵԼՇՏԱՄ (Mandelstam) Սթենլի (1928–2016), անգլիացի ֆիզիկոս (հվ-աֆրիկ. ծագման): Լոնդոնի թագավոր. ընկյան անդամ (1962): Աշխ-ները վերաբերում են դաշտի քվանտ. տեսությանը և տարր. մասնիկների ֆիզիկային. ներմուծել է (1958) կրկնակի դիսպերս. հարաբերակցությունը (Մ-ի **փոփոխականներ**), ձևակերպել Յանգմիլսյան տեսության Ֆեյմանի դիագրամների կառուցման կանոնները:

ՄԱՆԴԵԼՇՏԱՄ Օսիպ Էմիլևիչ (1891–1938), հրեա ռուսագիր բանաստեղծ,

արվ–ի տեսաբան, թարգմանիչ: Ն. Յ. *Մանդելշտամի* ամուսինը: Հեղինակ է «Քար» (1913), «Tristia» (1922, «Երկրորդ գիրք» վերնագրով՝ 1923), «Ներբող՝ գրված գրաքարով» (1923), «Բանաստեղծություններ» (1928) քնար., փիլ. ժող–ների, «Վորոնեժյան տետրեր» (1934–37, հրտ.՝ 1966) շարքի, «Բանաստեղծություններ անհայտ զինվորի մասին» (1937) տիեզերական՝ Հայտնության մոտիվներով օրատորիայի, «Ժամանակի աղմուկը» (1925) ինքնակենսագր. պատմվածքների ժող–ի, «Եգիպտական մակնիշ» (1928) վիպակի, «Բառի բնույթի մասին» (1922), «Պոեզիայի մասին» (1928), «Զրույցներ Դանտեի մասին» (1933) և այլ գր., գիտ. և գրաքննադատ., տես. աշխ–ների: 1934–ին Ի. Վ. Ստալինի դեմ գրած բանաստեղծության համար բանտարկվել է, աքսորվել Վորոնեժ, 1938–ին կրկին բանտարկվել է, մահացել բանտում:

Մ. հետաքրքրվել է նաև Հայաստանով և հայ մշակույթով: 1930–ի մայիս–նոյեմբերին եղել է Հայաստանում, մտերմացել է Ե. Չարենցի, Աշոտ Հովհաննիսյանի և ուր. հետ: Հայաստանի պատմության մասին գրել է 13 բանաստեղծություն, «Ճանապարհորդություն Հայաստանում» (1933) էսսեն: Հայ. հրատարակվել են «Մեզանում» (1993), «Բանաստեղծություն, արձակ» (2012) ժող–ները:

ՄԱՆԴԻՆՅԱՆ Ամիրան Մանդենի (1848–1913), դերասան, մանկավարժ, թարգմանիչ: 1879–81–ին՝ Թիֆլիսի հայոց դերասան. մշտ. թատերախմբի դերասան, ապա մինչև 1910–ը հանդես է եկել տարբեր խմբերի ներկայացումներում (Կակուլի՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», Յուսով՝ Ա. Ն. Օստրովսկու «Եկամտաբեր պաշտոն», ևն): Թարգմանել է պիեսներ (Մոլիերի «Դոն Ժուան» ևն): Հեղինակ է «Իմ հիշատակարանը» թատեր. հուշագրության (տպագրվել է «Հուշարար» հանդեսում, 1907–13):

ՄԱՆԴԻՆՅԱՆ Սեդրակ Ավետի (1844–1915), մանկավարժ, դերասան, հաս., գր–թատեր. գործիչ: 1874–78–ին՝ Թիֆլիսի Ներսիսյան, 1892–95–ին՝ Երևանի թեմ. դպրոցների տեսուչ, 1881–1900–ին դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1864–68–ին՝ Թիֆլիսի հայկ. թատրոնի դերասան, 1879–80–ին՝ Հայոց դերասան. մշտ. խմբի դերասան ու ռեժ.: Հեղինակ է կրթության և դաստիարակության խնդիրներին նվիրված աշխ–ների, դասագրքերի: Կատարել է թարգմ–յուններ:

ՄԱՆԴԻԼ, պավիանների ցեղի կապիկ: Մարմնի երկ.՝ մինչև 1 *մ* (էգերը փոքր են): Արուները կաթնասունների մեջ ամենավառ և արտասովոր գունավորումն ունեն: Ապրում են Արմ. Աֆրիկայի հասարակած. անտառներում: Խմբեր են կազմում, երբեմն միավորվում են հոտերում: Քնում են ծառերի վրա: Կովարար են և հարձակվող: Բազմանում են անազատ պայմաններում:

ՄԱՆԵ (Manet) Էդուարդ (1832–1883), ֆրանսիացի գեղանկարիչ: Հարել է իմպրեսիոնիզմին: Հին վարպետների ստեղծած կերպարներն ու սյուժեները վերաիմաստավորել է արդիականության ոգով («Նախաճաշ խոտի վրա», «Օլիմպիա», երկուսն էլ՝ 1863), ստեղծել է կենցաղ., պատմ. թեմաներով գործեր («Նախաճաշ արվեստանոցում», 1868, ««Ֆոլի–Բերժեր» բարը», 1881–82): 1870–ական թթ–ին անդրադարձել է լուսավոր պլեներ. գեղանկարչությանը («Արժանթեյ», 1874):

ՄԱՆԵԵՎ Իվան (Հովհաննես, 1763–1790), ռուս. բանակի հայազգի գնդ. (1790): 1787–91–ի ռուս–թուրք. պատերազմում, որպես գնդի հրամ., մասնակցել է Կինբուռնի (1787), Ֆոկշանի, Ռիմնիկի (1789) ճակատամարտերին: Զոհվել է Իզմայիլի գրավման (սեպտ.) ժամանակ:

Պարգևատրվել է շքանշաններով:

ՄԱՆԵԺ (ֆրանս.՝ manege), 1. տարածք կամ շենք, որը նախատեսված է ձիերի վարժեցման, ձիավարության ուսուցման, ձիասպորտ. մրցումների համար: Ճարտ. տեսանկյունից առավել արտահայտիչ են կլասիցիզմի դարաշրջանի Մ–ները (Մոսկվայի Մ., 1817–25, հեծելազվարդիական Մ., 1804–07, Ս. Պետերբուրգ): 2. **Մ. կրկեսային**, բեմահարթակ, որտեղ տեղի են ունենում ներկայացումները:

ՄԱՆԵՎԻՉ Լև Եֆիմովիչ (1898–1945), հետախույզ, գնդ. (1935): ԽՄ հերոս (1965, հետմահու): Ձերբակալել է իտալ. ֆաշիստ. հակահետախուզությունը, 1943–ից՝ ֆաշիստ. ճամբարներում: Ազատվելուց հետո մահացել է թոքախտից:

ՄԱՆԵՐԻԶՄ (իտալ.՝ manierismo, < maniera – մաներա, ոճ), ուղղություն XVI դ–ի և XVIII դ–ի սկզբի արևմտաեվրոպ. արվ–ում և գրկ–յան մեջ. արտացոլել է Վերածննդի հումանիստ մշակույթի ճգնաժամը: Մաներիստները (Իտալիայում՝ նկարիչներ՝ Յ. Պոնտորմո, Ռոսսո, Ֆ. Պարմիջանինո, Ա. Բրոնզինո, քանդ–ներ՝ Բ. Չելլինի, Ջամբոլոնիայ) հաստատել են կենսակերպի անկայունությունը, ողբերգ. հակադրությունը, իռացիոնալ ուժերի իշխանությունը, արվ–ի սուբյեկտիվությունը: Իր տեղը գիջել է *բարոկկոյին*:

ՄԱՆԵՐՀԱՅՄ (Mannerheim) Կառլ Գուստավ Էմիլ (1867–1951), բարոն, ֆինն պետ., ռազմ. գործիչ, մարշալ (1942): 1939–ից՝ ֆինն. բանակի գլխ. հրամ., 1931–ից՝ Պետ. պաշտպ–յան խորհրդի նախագահ: *Խոհրդա–ֆինական պատերազմի* ժամանակ և 1941–44–ին, որպես ֆաշիստ. Գերմանիայի դաշնակից, ղեկավարել է ֆինն. բանակի գործողությունները: 1944–ի օգոստ–1946–ի մարտին՝ Ֆինլանդիայի նախագահ: Մ–ի անվան հետ է կապված *«Մաներհայմի գիծ»* արտահայտությունը:

«ՄԱՆԵՐՀԱՅՄԻ ԳԻԾ», նախկին ֆինն. սահմանային ամրությունների համակարգ Կարելիայի պարանոցում: «Մ. գ.» է կոչվել Կ. *Մաներհայմի* անունով: Կառուցվել է 1920–39–ին՝ Խորհրդա–ֆինն. (1939–40) պատերազմի ժամանակ: 1944–ին խորհրդ. զորքերը ճեղքել են «Մ. գ.» և ոչնչացրել նրա պաշտպ. կառույցները:

«ՄԱՆԶՈՒՄԷԻ ԷՖՔԵԱՐ» («Կարծիքների շարք»), քաղ. տնտ., գր., մշակութ. պարբերաթերթ (1866–1917, Կ. Պոլիս՝ հայատառ թուրք., 1896–ից՝ հայ.): Խմբ–ներ՝ Կարապետ Փանոսյան, Միսաք Գոչունյան, Սմբատ Բյուրատ և ուր.:

ՄԱՆԹԱՇ, գետ Շիրակի մարզում, Կարկաչանի վերին հոսանքը: Սկիզբ է առնում Արագած լ–զանգվածի հս–արմ. լանջից՝ 3480 *մ* բարձր–ից: Երկ.՝ 32 *կմ*, ավազանը՝ 38,5 *կմ*^{2}, միջին ծախսը՝ 0,42 *մ*^{3}/*վ* (Մեծ Մանթաշ գ.): Հոսում է տաշտակաձև, ապա V–աձև հովտով: Մնումը խառն է, վարարումը՝ մայիս–հունիսին: Գետահովտում շատ են քաղցրահամ և հանք. աղբյուրները, գեղատեսիլ ջրվեժներն ու սահանքները: Մ–ի վերին հոսանքում է *Մանթաշի ջրամբարը*:

ՄԱՆԹԱՇԻ ՋՐԱՄԲԱՐ, Շիրակի մարզում՝ Մանթաշ գետի վրա՝ Արագածի լանջին՝ 2550 *մ* բարձր–յան վրա: Շահագործման է հանձնվել 1967–ին, վերակառուցվել՝ 1973–ին: Մակերեսը՝ 0,79 *կմ*^{2}, առվ–ն խոր.՝ 25 *մ*, ջրատարողությունը՝ 8,2 մլն *մ*^{3}, օգտ.՝ 7,9 մլն *մ*^{3}: Մնումը խառն է, հոսքի կարգավորումը՝ սեզոնային: Պատվարը քարալից–քային է՝ երկաթբետոնե պաստառով: Երկ.՝ 407 *մ*, առվ–ն բարձր.՝ 29 *մ*: Ջուրը բաց է թողնվում աշտարակ. տիպի ոռոգող ջրթողի միջոցով: Օգտագործվում է Արթիկի ու մերձակա գյուղերի հողատարածքների ոռոգման նպատակներով:

ՄԱՆԹԱՆՑՅԱՆ Ադոլֆ Հայրապետի (ծ. 1932), քիմֆիզիկոս: Քիմ. գիտ. դ–ր (1974), պրոֆ. (1976): ՀՀ ԳԱԱ ակադ. (1994, թղթ. անդամ՝ 1990–ից, 2007–11–ին՝ Քիմիայի և երկրի մասին գիտ–յան բաժանմունքի ակադ. քարտուղար): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2003): Եղել է ՀՀ ԳԱԱ քիմ. ֆիզիկայի ինստ–ի տնօրեն (1987–2006): Աշխ–ները վերաբերում են շղթ. ռեակցիաների, մասնավորապես՝ ածխաջրածինների օքսիդացման մեխանիզմներին: Մշակել է (Արամ *Նալբանդյանի* հետ) ռադիկալների սառեցման կինետիկ. եղանակ: Ածխաջրածինների գազաֆազ օքսիդացման շարժընթացներում հայտնաբերել է գլխ. ակտիվ կենտրոնները՝ ալկիլ, գերօքսիդային և ալկօքսի ռադիկալները: Առաջարկել է ածխաջրածինների օքսիդացման նոր մեխանիզմ, ըստ որի՝ կարևոր դեր են խաղում ոչ գծային ռեակցիաները, և օքսիդացման գլխ. արգասիքներն առաջանում են ալկօքսի ռադիկալներից:

ՀՀ Պետ. մրց. (1976): Ամերիկյան կենսագր. ինստ–ի «Տարվա մարդ» (1998):

ՄԱՆԹԱՇՅԱՆ, Մանթաշով, Ալեքսանդր Հովհաննեսի (1842–1911), մեծահարուստ, նավթարդյունաբերող, բարերար: 1895–ից՝ *Կովկասի հայոց բարեգործական ընկերության* ցկյանս պատվո նախագահ: 1887–ից Բաքվում զբաղվել է նավթարդյունահանությամբ (շարունակել է հոր գործը): Դառնալով Թիֆլիսի առևտր. բանկի գլխ. բաժնետերը՝ 1889–ին ստեղծել է «Ա. Մանթաշյանց և ընկ. առևտրական տուն» բաժնետիր. ընկ–ը (կապիտալը 1889–ին՝ 22 մլն, 1914–ին՝ 30 մլն ռուբլի), որը մասնաճյուղեր է ունեցել բազմաթիվ երկրներում: Հիմնադրել է Մանթաշյան առևտր. դպրոցը: Մ–ի գումարներով կառուցվել են եկեղեցիներ, Ներսիսյան դպրոցի նոր շենքը, բազմաթիվ շինություններ Թիֆլիսում և Բաքվում: Մ. հովանավորել է հարյուրավոր հայ երիտասարդների (այդ թվում՝ Կոմիտասին, նվիրել է նաև դաշնամուր)՝ եվրոպ. առաջատար համալսարաններում կրթություն ստանալու համար:

ՄԱՆԹՈՒԻ ՓՈՐՁ, **Մանթուի ռեակցիա**, ալերգ. ախտորոշիչ փորձ՝ տուբերկուլինի ներմաշկ. ներարկմամբ: Կիրառվում է մարդու տուբերկուլոզի վաղ ախտորոշման և իմունացման համար անձանց ընտրելու նպատակով: Առաջարկել է ֆրանս. գիտնական Շ. Մանթուն (Ch. Mantoux) 1908–ին:

ՄԱՆԻ, **Մանիքեոս** (լատ.՝ Manes, Manichaeus, 216/217–276), *մանիքեության* հիմնադիրը: Գաղափարները շարադրվել են «Գաղտնիքների գիրք», «Պատվիրանների գիրք ունկնդիրների համար», «Կենդանացուցիչ գիրք» և այլ երկերում: Մ–ի

ուսմունքը տարածվել է Հայաստանում, որոշակի ազդեցություն գործել պավլիկյան և թոնդրակյան աղանդների վրա:

ՄԱՆԻ, հայկ. հեթանոս. տոմարի ամիսներ 16–րդ օրվա անվանումը:

ՄԱՆԻԱ (հուն.՝ mania – խելացնորություն, զմայլանք, մոլություն), 1. հոգեկան խանգարում, որը բնորոշվում է տրամադրության բարձրացմամբ, շարժող. գրգռվածությամբ, մտածողության արագացմամբ, շատախոսությամբ: 2. Ախտաբանական մղում, հակում, կիրք, մոլություն (օր.՝ գրաֆոմանիա՝ գրամոլություն):

ՄԱՆԻԼԱ (Manila), *Ֆիլիպինների* մայրաքաղաքը և երկրի գլխ. տնտ. ու մշակութ. կենտրոնը Լուսոն կղզու կենտր. մասում: Բն.՝ 1,7 մլն (արվարձաններով՝ շուրջ 20,7 մլն, 2010): Ծով. նվինգստ է, ունի միջազգ. օդանավակայան: Տնտ–յան մեջ գերակշռում է ծառայությունների ոլորտը: Կան մեքենաշին. (էլեկտրոն., ավտոմեքենաշին. և նավաշին.), քիմ., դեղագործ., փայտամշակման, կահույքի և այլ ձեռնարկներ: Գործում են բազմաթիվ համալսարաններ, թատրոններ և թանգարաններ (այդ թվում՝ Ֆիլիպինների ազգ., Սանտո Թոմաս ևն): Հայտնի է IX դ–ից: 1570–ին գրավել և այրել են իսպանացիները: 1571–ին վերակառուցվել է:

XVI–XVIII դդ–ում հայ վաճառականներն ակտիվ մասնակցություն են ունեցել Մ–ի միջազգ. առևտրին, իսկ որոշ ժամանակ ունեցել են նաև առևտրային մենաշնորհ: Նրանք կապող օղակ են եղել Հնդկաստանի, Չինաստանի և Արևելքի այլ երկրների հետ ծավալվող առևտրում, որը հայտնի է Մ–ի հայկ. առևտուր անունով: XVIII դ–ի կեսից ծովահենության պատճառով Մ–ի առևտրի հայկ. մենաշնորհը վերացվել է, տարածաշրջ. առևտրին մասնակցությունը՝ նվազել:

ՄԱՆԻՆ Յուրի Իվանովիչ (ծ. 1937), ռուս մաթեմատիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1990–ից): Աշխ–ները վերաբերում են հանրահաշվ. երկրչափ–յանը և թվերի տեսությանը: Լենինյան մրց. (1967):

ՄԱՆԻՆԵՐ, հայկ. ժող. քնար. երգվող քառատողեր, **խաղիկներ:** Երբեմն նույնացվում են *վիճակի երգերի* հետ:

ՄԱՆԻՈՆ, իշխաթևուկազգիների ընտանիքի բույսերի ցեղ: Թփուտներ և խոտաբույսեր են, հազվադեպ՝ ցածրաբուն ծառեր: Հայտնի է ավելի քան 160 տեսակ՝ Ամերիկայի արևադարձներում: Հնուց մշակել են տապիոկ (ձավար) ստանալու համար:

ՄԱՆԻՊՈՒԼՅԱՏՈՐ (լատ.՝ manipulare – ղեկավարել ձեռքով), **ձեռնանմանակ**, 1. մեխանիզմ, որը գործարկուի կառավարմամբ կատարում է մարդու ձեռքի գործողությունների նման գործողություններ: Օգտագործում են ծանր կամ վտանգավոր պայմաններում աշխ. կատարելիս (օր.՝ հանք. գործում, ԱԷԿ–ում և այլուր): 2. Ինքնաշխատ Մ–ները (այդ թվում՝ ծրագր. կառավարմամբ) 1976–ին ստացան արդ. ռոբոտներ անվանումը: 3. Կրկեսի արտիստ, ճգպարար–ձեռնածու:

ՄԱՆԻՊՈՒՐԻԵՐԵՆ, *մեյթեյի*, Հնդկաստանի Մանիպուրի նինգ–ի, մանիպուրի ժողդ–ի լեզուն: Պատկանում է չին–տիբեթ. լեզվաընտանիքի տիբեթա–բիրման. ճյուղին: Գիրն ստեղծվել է XVIII դ–ում՝ բենգալ. այբուբենի հիման վրա:

ՄԱՆԻՔԵՈՒԹՅՈՒՆ, կրոն. ուսմունք: Հիմնադրել է *Մանին* III դ–ում Մերձ. Արևելքում: Մ–յան հիմքում չարի և բարու, լույսի և խավարի՝ որպես կեցության սկզբնական և իրավահավասար սկզբունքների մասին դուալիստ. ուսմունքն է: Տարածվել է Չինաստանից մինչև Իսպանիա՝ ենթարկվելով *գրաղաշտականության*, հոմո. հեթանոսության, *քրիստոնեության*, *մահմեդականության* հալածանքներին: VIII–IX դդ–ում Ույգուր. թագավորության պետ. կրոնն էր: Որոշակի ազդեցություն է թողել միջնադար. դուալիստ. հերետիկոսության վրա: Հայաստան է ներթափանցել IV դ–ում, V դ–ում պաշտոն. քրիստ. միջավայրում համարվել է վտանգավոր աղանդ: *Եզնիկ Կողբացին* իր «Եղծ աղանդոց» երկում մերժել է Մ.:

ՄԱՆԻՖԵՍՏ 1905–Ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17–Ի «ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ», օրենսդր. ակտ, ստորագրել է Ռուսաստանի կայսր Նիկոլայ II–ը՝ Հոկտ. համառուս. գործադուլի վերելքի ժամանակ: Հռչակվել են քաղաքաց. ազատություններ, Պետ. դումայի ստեղծում: Նախապատրաստել է Ս. Յ. *Վիտրեն*:

ՄԱՆԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **պեդոլոգիա** (< հուն. pais, սեռ. հոլ.՝ paidos – երեխա և *…լոգիա*), գիտ–յուն երեխաների մասին, ուղղություն հոգեբ–յան և մանկավարժության մեջ, որի նպատակը երեխայի զարգացմանն ուղղված կենսբ., սոցիալ., հոգեբ. և այլ մոտեցումների միավորումն է: Ձևավորվել է XIX դ–ի վերջին: Մ–յան վերաբերյալ առաջին աշխ–ները ստեղծվել են XX դ–ի սկզբին արտերկրում (Գ. Հոլ, Ջ. Բոլդու, Վ. Մ. Բեխտերև, Գ. Ի. Ռոսոլիմո, Ա. Պ. Նեչան): Պաշտոնապես արգելվել է ԽՍՀՄ–ում (1936), որն էականորեն արգելակել է նրա՝ որպես համալիր գիտ–յան ձևավորումը:

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ, կլինիկ. բժշկագիտ–յան հնագույն բնագավառ: Ուսումնասիրում է կնոջ և պտղի օրգանիզմում հղիության և ծննդաբերության հետ կապված կենսընթացները, այդ շրջանի ախտաբանությունը և բուժկանխարգելիչ միջոցառումները: Գիտ. Մ. զարգանում է XVII–XVIII դդ–ից՝ կապված անատոմիայի, սաղմնաբանության, ֆիզիոլոգիայի և կլինիկ. բժշկագիտ–յան հաջողությունների հետ: Ժամանակակից Մ. և *գինեկոլոգիան* միասնական գիտ–յուն են:

ՄԱՆԿԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, **պեդիատրիա** (< հուն. pais, սեռ. հոլ.՝ paidos – երեխա և iatreia – բուժում), բժշկագիտ–յան բնագավառ. ուսումնասիրում է մանկ. օրգանիզմի անատոմաֆիզիոլոգ. առանձնահատկությունները, հիվանդությունների առաջացման մեխանիզմները, մշակում ախտորոշման, բուժման և կանխարգելման մեթոդներ:

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ Երևանի պետական, գործել է 1988–98–ին (հիմնադիր–գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր՝ Դ. Զալյան, ռեժ.՝ Ա. Մելիքսեթյան): Նպատակը հայ և համաշխ. մանկ. երկերի տարածումն էր, մանուկների գեղագիտ. գիտելիքների զարգացումը: Խաղացանկում՝ Ֆ. Զյուսմայերի «Անվանակոչություն» մանկ. (1988), Ջ. Պերգոլեզիի «Ստաբատ մատեր» (1989) կանտատները, Վ. Ամեմյանի «Կիկոս» (ըստ Հ. Թումանյանի, 1990), Ս. Լուսիկյանի «Շպուռն ու մրջյունը» (1991), Բ. Բրիտտենի «Նոյի տապան» (1994) օպերաները և այլ գործեր:

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, մանուկների կատարման կամ նրանց ունկնդրման համար նախատեսված երաժշտություն: Ընդգրկում է երգ, խմբերգ, կանտատ, գործիք. և նվագախմբային երկեր, օպերա, բալետ և այլ ժանրեր: Հայ կոմպոզիտորներից Մ. ե–յան նմուշներ են ստեղծել Կոմիտասը, Ա. Մանուկյանը, Մ. Միրզոյանը, Ե. Բաղդասարյանը, Ա. Մայիլյանը, Կ. Զաքարյանը, Մ. Մազմանյանը, Ա. Խաչատրյանը, Ս. Ջրբաշյանը, Վ. Աճեմյանը, Ս. Շաքարյանը, Ղ. Սարյանը և ուր.:

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ Երևանի, Հրազդանի կիրճում: Երկ.՝ 2,1 *կմ*: Հիմնադրվել է 1937–ին:

ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ, մանուկների դաստիարակությանը ծառայող պրոֆեսիոնալ թատրոն: Հայկ. 1–ին Մ. թ. հիմնադրվել է Թիֆլիսում 1927–ին (տես *Թբիլիսիի պապանի հանդիսատեսի հայկական թատրոն*), 1929–ին՝ Երևանի պատանի հանդիսատեսի, 1935–ին՝ Գյումրիի և Երևանի, 1991–ին՝ Գեղագիտ–յան ազգ. կենտրոնի, 1993–ին՝ Վանաձորի տիկնիկ., 1987–ին՝ Երևանի մարիոնետների (այժմ՝ Երևանի խամաճիկների թատրոն), 1988–ին՝ Մանկ. երաժշտ. թատրոնները:

ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ, պարբ. հրտ–յուններ նախադպրոց., կրտսեր, միջին ու բարձր տարիքի երեխաների համար: Հայկ. 1–ին մանկ. հրտ–յուններն են «*Բուրաստան Մուրբ Սահակեան*» (1851–55, Կ. Պոլիս) և «*Թոռթակ Հայկազեան*» (1854–55, Զմյուռնիա) պարբ–ները: Ավելի քան 2 տասնյակ մանկ. պարբ–ներ են լույս տեսել Թիֆլիսում, Լոնդոնում, Ալեքսանդրիայում, Բուխարեստում, Փարիզում, Երևանում, Թեհրանում, Հալեպում, Բեյրութում և այլուր: Ներկայում Երևանում լույս են տեսնում «*Աղբյուր*» (1925–ից, մինչև 1990–ը՝ «Պիոներ»), «*Կանչ*» (1925–ից, մինչև 1990–ը՝ «Պիոներ կանչ»), «*Ծիծեռնակ*» (1967–ից), «*Ուրախ գնացք*» (2009–ից), Բեյրութում՝ «*Պատանեկան արձագանգ*» (1936–ից), Թեհրանում՝ «Ալիք պատանեկան» (1969–78, 2010–ից), Լոս Անջելեսում՝ «*Կաքաւիկ*» (2011–ից) և այլ պարբ–ներ:

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ Հայաստանի, մանկ. ստեղծագործության պատկերասրահ: Հիմնադրվել է 1970–ին Երևանում՝ 1968–ին Երևանի նկարչի տանը բացված «Աշխարհը երեխաների աչքերով» մանկ. ստեղծագործությունների ցուցահանդեսի հիման վրա՝ արվեստաբաններ Հենրիկ *Իգիթյանի* և Ժ. Աղամիրյանի նախաձեռնությամբ: Ունի մշտ. ցուցադրություն և ցուցասրահ, կազմակերպվում են անհատ. և թեմատիկ ցուցահանդեսներ: 1978–ին *Գեղագիտության ազգային կենտրոնի* համալիրի հիմնադրումով՝ Մ. պ. վերածվել է Հայաստանի մանկ. ստեղծագործության թանգարանի (մասնաճյուղեր՝ Գյումրիում, Վանաձորում, Գորիսում, Կապանում, Մևանում, Սպիտակում, Մեղրիում):

ՄԱՆԿԱԿԱՆ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԱ Յուրի Բախշյանի անվան Երևանի քաղաքապետարանի, հիմնադրվել է 1994–ին (հիմնադիր–տնօրեն՝ Սարգիս Մարգարյան): Կազմում՝ կամեր., ժող. գործիքների, էստրադ., սիմֆ., փող. նվագախմբեր, վոկալի, պարի և կիթառի դասարաններ: Մասնակցել է «Աշխարհը փոխենք դեպի լավը» (2002, Մեծ և 1–ին մրց–ներ, Արտեկ) և այլ միջազգ. փառատոների: Կազմակերպում է «Ոսկե սրինգ» (2002–ից), «Հայաստանի երեխաները Աջարիայի երեխաներին» փառատոները:

Քրիստոնեության ընդունման 1700–ամյակին նվիրված փառատոնի դափնեկիր (2001):

ՄԱՆԿԱՀԱՎԱՔ, մանկաժողով, օսմ. Թուրքիայում հպատակ քրիստոնյա մանուկների բռնի հավաքագրում *janiչերիների* շարքերը համալրելու համար: Սկզբնավորվել է XIV դ–ի 2–րդ կեսին, Հայաստանում իրականացվել 1464–ից: Նպատակը քրիստոնյաների դիմադրող. ուժը ջլատելն էր, նրանց ձուլումը դյուրացնելը:

ՄԱՆԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, հոգեբ–յան բաժին. ուսումնասիրում է երեխայի հոգեկան զարգացման դրսևորումներն ու օրինաչափությունները: Սերտորեն կապված է մանկավարժության, մանկավարժ. հոգեբ–յան, հասակ. ձևաբանության, ֆիզիոլոգիայի, հատկապես՝ երեխայի բարձրագույն նյարդ. գործունեության ֆիզիոլոգիայի հետ: Մ. հ., որպես գիտ–յան ինքնուրույն բնագավառ, սկսել է զարգանալ XIX դ–ի 2–րդ կեսից՝ Չ. Դարվինի գաղափարների ազդեցությամբ: XX դ–ում դրան նպաստել են Ժ. Պիաժեն, Բ. Ինհելդերը, Ա. Վալլոնը, Ջ. Բրուները և ուր.: Հետազոտություններ կատարվել են նաև Հայաստանում (Գ. Էդիլյան, Մ. Մազմանյան, Ե. Ալեքսանդրյան, Մ. Երիցյան և ուր.): Տես նաև *Տարիքային հոգեբանություն*:

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, նախադպրոցականից մինչև դպրոցական բարձր տարիքի երեխաների համար գրված գեղ., գիտազեղ., գիտահանրամատչելի ստեղծագործություններ. արծարծում են այնպիսի հարցեր, որոնք կհետաքրքրեն տվյալ տարիքի երեխաներին և մեկնաբանում են նրանց զարգացմանը համապատասխան գեղ. ձևերով: Մ. գ. ներառում է նաև մեծերի համար գրված բազմաթիվ երկեր՝ Մ. Սերվանտեսի («Դոն Կիխոտ»), Ջ. Սվիֆտի («Գուլիվերի ճանապարհորդությունը»), Ֆ. Ռաբլեի («Գարգանտյուա և Պանտագրյուել»), Դ. Դեֆոի («Ռոբինզոն Կրուզո»), Է. Վոյնիչի («Բոռ»), Ժյուլ Վեռնի, Չ. Դիքենսի և համաշխ. գրկ–յան այլ դասականների ստեղծագործությունները: Հայ գրկ–յան մեջ Խ. Աբովյանն առաջինն է գրել մանուկների համար: Մ. գ–յան համար լավագույն գործեր են ստեղծել Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը, Դ. Դեմիրճյանը, Ս. Զորյանը, Աբազին, Խնկո–Ապերը, Գ. Սահարին, Մ. Արմենը, Խ. Գյուլնազարյանը, Վ. Անանյանը, մեր օրերում՝ Ն. Միքայելյանը, Ս. Մուրադյանը, Յ. Սահակյանը, Է. Միլիտոնյանը և ուր.:

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐ, արտադպրոց. հատուկ մարզ. հիմնարկներ, որոնք նպաստում են մանուկների և պատանիների ֆիզ. զարգացմանն ու դաստիարակությանը: Ընդունվում են համապատասխան ֆիզ. պատրաստություն ունեցող 8–14 տարեկան երեխաներ: ՀՀ–ում ներկայում գործում են շախմատի, ֆուտբոլի, մարմնամարզության, հեծանվասպորտի, գեղասահքի, արլ. մարտարվ–ների և այլ ուղղվածության շուրջ 80 Մ. մ.:

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ, արտադպրոց. դաստիարակության հաստատություններ, որտեղ սաները մասնագիտանում են արվ–ի և արհեստի տարբեր ճյուղերում, ստանում ազգ. և հոգևոր կրթություն ու դաստիարակություն: Խորհրդ. տարիներին այդ գործառույթը կատարել են պիոներների ու դպրոց. պալատները (1983–ին՝ 57 պալատ՝ 2600 խմբակով ու բաժանմունքով, ավելի քան 40 հզ. պիոներ–դպրոցականներ), պատանի բնասերների և տեխնիկների կայանները (1983–ին՝ բնասերների 8 կայան՝ 25 հզ. երեխա, և տեխնիկների 26 կայան՝ 9 հզ. երեխա): Հետխորհրդ. տարիներին դրանց հիմքի վրա ստեղծվել են *հայրդաց տները*, Երևանի վարչ. շրջաններում և ՀՀ մարզերում հիմնադրվել են մի շարք նոր կենտրոններ: Իրենց գործունեությամբ աչքի են ընկնում *Դեղագիտության ազգային կենտրոնը*, *Երևանի քաղաքապետարանի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը*, «Դեկարտ» մանկապատանեկան մշակութ. կենտրոնը, «*Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը*, «Զարթոնք» մանկ. գեղ. դաստիարակության կենտրոնը ևն: Մանկապատան. արտադպրոց. դաստիարակության գործառույթ են իրականացնում նաև գրադարանները, երաժշտ. և արվ–ի դպրոցները, թանգարանները, թատրոնները և մշակութ. այլ օջախներ:

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ, նախադպրոց. տարիքի (1–6 տարեկան) երեխաների հաս. դաստիարակության հիմնարկ: Մ–ի տիպի մանկ. անդրանիկ հաստատությունը կազմակերպել է Ռ. *Օուենը* 1802–ին Շոտլանդիայում: Նախադպրոց. հիմնարկը «Մ.» է անվանել Ֆ. *Ֆրյոբելը* 1837–ին: Հայ իրականության մեջ 1–ին Մ–ները բացել են Գայանե *Հովհաննիսյանը* 1882–ին Թիֆլիսում, 1883–ին՝ Երևանում, Սոֆյա *Արղության–Երկայանաբազուկը*՝ 1886–ին Թիֆլիսում: 2015–ին ՀՀ–ում գործել են ավելի քան 600 պետ. և համայնք. ենթակայության (2011–ից՝ անվճար հիմունքներով), նաև 16 ոչ պետ. Մ–ներ՝ տարիք. 3 խմբով՝ վաղ տարիքի (մինչև 3 տարեկան), կրտսեր տարիքի (3–5 տարեկան) և ավագ տարիքի (5–6 տարեկան):

«ՄԱՆԿԱՎԱՐԺ», կրթ., տես., մեթոդ. ամսագիր (1926–91, Երևան, 1926–31–ին՝ «Ժողովրդական լուսավորություն», 1931–33–ին՝ «Կոմունիստական լուսավորություն», 1933–41 և 1989–91–ին՝ «Խորհրդային մանկավարժ», 1952–89–ին՝ «Սովետական մանկավարժ», 1991–ին՝ «Մ.»): Խմբ–ներ՝ Սերիկ Դավթյան, Սիմակ Սահակյան, Սուշեղ Սանթրոսյան, Մկրտիչ Սազմանյան, Սուրեն Խուդոյան, Հայկ Պարոնյան, Ռոմա Դալլաքյան, Յոլակ Պողոսյան, Միքայել Մկրտչյան:

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹ», կրթադաստիարակչ., մշակութ. ամսագիր (1878–79, Թիֆլիս): Արտոնատեր–խմբ.՝ Հակոբ Տեր–Հովհաննիսյան:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, համալսարաններում, ինստ–ներում և ուսումնարաններում հանրակրթ. դպրոցների և ուսումնադաստիարակչ. այլ հիմնարկների համար մանկավարժ. կադրերի (ուսուցիչ, դաստիարակ ևն) պատրաստման համակարգ: Նախկինում նման գործառույթ կատարել են ուսուցչ. սեմինարիաները, գիմնազիաները, պրոգիմնազիաները, երկդասյան ուսուցչ. դպրոցները, 1860–70–ական թթ–ին բացված Կանանց բարձրագույն դասընթացները:

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ», կիսամսյա պարբերաթերթ (1965–ից, Երևան, մինչև 2000–ը՝ «Մանկավարժ», 2000–03–ին՝ «Ապագա մանկավարժ»): ՀՊՄՀ–ի պաշտոնաթերթը:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, հոգեբ–յան ընագավառ. ուսումնասիրում է մարդու հոգեկանի զարգացումը դաստիարակության և ուսուցման գործընթացում, մշակում է վերջինիս հոգեբ. հիմունքները: Ձևավորվել է XIX–XX դդ–ում՝ դաստիարակության և ուսուցման բաժիններով:

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ», կրթ., գր. հանդես (1884–87, Թիֆլիս, ապա՝ Ախալցխա, Ս. Պետերբուրգ): Խմբ.՝ Խորեն Ստեփանե:

«ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ», գիտատես. և գիտամեթոդ. հանդես (2001–ից, Երևան, հոդվածները՝ հայ., ռուս., անգլ.): ՀՊՄՀ–ի և Միջբուհ. ընկերակցության հրտ–յուն: Գլխ. խմբ.՝ Նաիրա Հակոբյան:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, գիտ–յուն մարդու ձևավորման համար հատուկ համակարգված նպատակամետ գործունեության, կրթության, ուսուցման, դաստիարակության ձևերի, մեթոդների, բովանդակության մասին: Ձևավորվել է Հին Արևելքում (մ. թ. ա. IV–V դդ.) և Հին Հունաստանում ու Հռոմում (մ. թ. ա. V–IV դդ.)՝ որպես փիլ–յան բաղկացուցիչ մաս: XVII–XIX դդ–ի հայտնի մանկավարժներ են Յ. *Կոմենսկին*, ժ–ժ. *Ռուսոն*, Ի. *Պեստալոցցին*, Յ. *Հերբարթը*, Ա. *Դիստերվեգը*, Կ. Դ. *Ուշինսկին*, Ն. Ի. *Պիրոգովը* և ուր.:

Հայ Մ–յան պատմությունը սկզբնավորվել է գրերի գյուտից հետո *Մեսրոպ Մաշտոցի* և նրա աշակերտների բացած դպրոցներում: Այն հետագայում զարգացել է Անանիա Շիրակացու, Գրիգոր Մագիստրոսի, Ներսես Մշեցու, Եսայի Նշեցու, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու, Թովմա Մեծոփեցու, Հովհաննես Սարկավագի և ուր. ղեկավարած միջնադար. համալսարաններում, բարձր տիպի դպրոցներում, XVIII–XIX դդ–ում՝ Կ. Պոլսում, Մոսկվայում, Թիֆլիսում, Վենետիկում, Կալկաթայում, Փարիզում, Էջմիածնում, Աստրախանում, Շուշիում, Նոր Նախիջևանում, Թեոդոսիայում, Ալեքսանդրապոլում, Կարինում, Վանում, Երևանում, Ախալցխայում ու այլ ք–ներում բացված և մեծ հեղինակություն վայելած մի շարք ճեմարաններում, վարժարաններում ու դպրոցներում:

XIX դ–ի 1–ին կեսին մանկավարժ. բեղմնավոր գործունեություն են ծավալել Հարություն Ալամդարյանը, Խաչատուր Աբովյանը, Մեսրոպ Թաղիադյանը, Նիկողայոս Զորայանը, Միքայել Նալբանդյանը, Ստեփանոս Նազարյանը, 2–րդ կեսին՝ Պերճ Պռոշյանը, Խորեն Ստեփանեն, Ղազարոս Աղայանը, Մեղրակ Մանդինյանը, Առաքել Բահաթրյանը, Հովհաննես Հինդլյանը, դարավերջին՝ Ռեթեոս Պերպերյանը, Տիգրան Ռաշմաճյանը, Գուրգեն Էդիլյանը, Ստեփան Լիսիցյանը և ուր.:

Խորհրդ. տարիներին հայ Մ. կատարելագործվել է ԵՊՀ–ում, մանկավարժ. բուհերում, մանկավարժ. ԳՀԻ–ներում, Ուսուցիչների կատարելագործման հանրապետ. և քաղաք (Երևան) ինստ–ներում, մանկավարժ. մամուլում: Այդ գործընթացը շարունակվում է նաև հետխորհրդ. շրջանում. լույս են տեսել բազմաթիվ աշխ–ներ, մենագրություններ, դասա–

գրքեր, մեթոդ. ձեռնարկներ, հանրագիտարաններ, բառարաններ, պարբ-ներ, որոնք զգալիորեն հարստացրել են հայ մանկավարժ. գիտ-յունը: Մ-յան զարգացման գործում մեծ է ՀՀ ԿԳՆ-ի, Կրթության ազգ. ինստ-ի, մանկավարժ. բուհերի և այլ կառույցների դերը:

«ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ», գիտ-մեթոդ., վերլուծ. ամսագիր (2001-ից, Երևան): ՀՀ ԿԳՆ Կրթության ազգ. ինստ-ի հրտ-յուն: Գլխ. խմբ.՝ Սանուկ Մկրտչյան:

ՄԱՆԿԱՏՈՒՆ, կրթադաստիարակչ. հաստատություն ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար: Գոյություն ունի Մ-երի 3 հիմն. տիպ՝ նախադպրոց. (3–6 տարեկանների համար), դպրոց. (6–18 տարեկանների համար) և ընտանեկան (0–18 տարեկանների համար): Լինում են պետ. և բարեգործ.: 2016-ին ՀՀ-ում գործել են 8 պետ. Մ-եր (910 երեխա)՝ ՀՀ սոցիալ. ապահովության նախ-յան տնօրինությանը:

ՄԱՆԿԻՆ Վալերի Գրիգորևիչ (ծ. 1938), ռուս մարզիկ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1968), վաստ. մարզիչ (1984): Օլիմպ. խաղերի (1968, 1972, 1980), աշխարհի (1973), Եվրոպայի (1973, 1979), ԽՍՀՄ բազմակի (1959–81) չեմպիոն՝ առագաստանավերի տարբեր դասերում:

ՄԱՆԿՈՎՍԿԻ (Mańkowski) Տադեուշ (1878–1956), լեհ արվեստաբան: Լեհաստանի ԳԱ (Կրակով) անդամ (1939, թղթ. անդամ՝ 1933-ից): Հեղինակ է միջնադար. Ուկրաինայի և Լեհաստանի արվ-ի պատմությանը, նաև Արմ. Ուկրաինայի XIV–XVIII դդ-ի հայկ. գաղթավայրերին նվիրված աշխ-ների («Լվովի հայերի արվեստը», 1934–35, «Արևելքը լեհական գեղարվեստական մշակույթում», 1959), Լվովի հայկ. ճարտ. հուշարձաններին, նաև հայկ. ձեռագրերի կազմերին, մանրանկարներին վերաբերող մենագրությունների, հոդվածների (նաև հայ.):

ՄԱՆՀԵՅՄ (Mannheim) Կառլ (1893–1947), գերմանացի փիլ. և սոցիոլոգ: 1933-ից՝ Մեծ Բրիտանիայում: Հիմնվելով գաղափարախոսության մասին Կ. *Մարքսի* ուսմունքի վրա՝ այն համարել է ստատուս-քվոն արդարացնող «կեղծ գիտակցություն» և հակադրել ուտոպիային («Գաղափարախոսություն և ուտոպիա», 1929): Ըստ Մ-ի՝ ճշմարիտ սոցիալ. գիտակցությունը բնորոշ է միայն ստեղծագործող մտավորականությանը:

ՄԱՆԶՈՆԻ (Manzoni) Ալեսսանդրո (1785–1873), իտալացի գրող: Ռոմանտիկ. դպրոցի առաջնորդ: Հեղինակ է «Կառլո Իմբռնատի» (1806), «Ուրանիա» (1809), «Սրբազան հիմներ» (1812–22) կրոն. թեմաներով և այլ պոեմների, «1821 թվականի մարտ ամիսը», «Մայիսի 5-ը» (երկուսն էլ՝ 1821) և այլ ներբողների, «Կոմս Կարմանյոլա» (1820), «Ադելգիզ» (1822) պատմ. ողբերգությունների, «Նշանվածները» (1827, հայ.՝ 1928) պատմավեպի, նաև գեղագիտ-յանը, պատմությանը, բանահյուսությանը վերաբերող աշխ-ների: Հայ. հրատարակվել է նաև «Խօսեցեալք» (հ. 1–2, 1875) գիրքը:

ՄԱՆՅԱԿ, վզնոց, կնոջ պարանոցի զարդ: Ի հայտ են եկել դեռևս քարի դարում. պատրաստվել են մանր սարդիոն ուլունքներից, փոքրիկ խխունջներից, վայրի կենդանիների ատամներից: Հետագայում պատրաստել են հիմնականում ոսկուց և արծաթից: XIX դ-ում Հայաստանում թանկարժեք Մ-ներ են պատրաստել Կարինում, Վանում, Ալեքսանդրապոլում և այլուր:

ՄԱՆՅԱՆԻ (Magnani) Աննա (1908–1973), իտալացի դերասանուհի: Նեոռեալիզմի ներկայացուցիչ: Թատրոնում խաղացել է 1920-ական թթ-ի կեսերից, կինոյում՝ 1934-ից: Մ-ի արվ-ը խորապես ազգային է («Հռոմը՝ բաց քաղաք», «Հողը դողում է», «Երազանքներ ճանապարհներին», «Սեր», «Ամենագեղեցիկը», «Դաջված վարդ», «Մամա Ռոմա», «Հռոմ» ևն):

Վենետիկի կփ (1947), «Օսկար» (1956), «Ոսկե գլոբուս» (1956) և այլ մրց-ներ:

«ՄԱՆՅՈՍՅՈՒՆ», ճապոն. բանաստեղծությունների առաջին անթոլոգիան (VIII դ-ի 2-րդ կես)՝ բաղկացած 20 գրքից, մեծ մասը՝ *թանկայի* ոճով): Արտացոլել է անցումը երգի արվ-ից նամակային պոեզիային:

ՄԱՆՆԵՄԱՆՆԵՐ, եղբայրներ, գերմանացի ճարտարագետներ և ձեռնարկատերեր. 1. **Մաքս Մ.** (1857–1915), 2. **Ռեյնհարդ Մ.** (1856–1922): Հիմնադրել են գլանահաստոց և մեքենաշին. «Մաննեսման» կոնցեռնը (1890):

ՄԱՆՆԻԽԻ ՌԵԱԿՑԻԱ, ջրածնի շարժուն ատոմ պարունակող օրգ. միացությունների ամինամեթիլացում՝ մրջնալդեհիդի և ամոնիակի (ամինների) ազդեցությամբ: Մ. ռ. կիրառում են օրգ. սինթեզում և դեղանյութերի արդ-յան մեջ: Ռեակցիան հայտնաբերել է (1917) գերմանացի քիմիկոս Ք. Մաննիխը (1877–1947):

ՄԱՆՆՈԶ, $C_6H_{12}O_6$, միաշաքար, *խաղողաշաքարի* իզոմերը: Հանդիպում է հիմնականում տարբեր բակտերային, բուս. և կենդ. բազմաշաքարների (մաննանների) բաղադրության մեջ և ազատ վիճակում՝ ցիտրուսների և այլ բույսերի պտուղներում:

ՄԱՆՇՏԵՅՆ (Manstein) Էրիխ ֆոն Լևինսկի (Lewinski, 1887–1973), գերմանացի գեն-ֆլդմ. (1942): ԵՀՊ-ի ժամանակ խորհրդա-գերմ. ճակատում՝ կորպուսի, Վրիմի գրավմանը՝ 11-րդ բանակի, 1942–44-ին՝ «Դոն» և «Հարավ» բանակ. խմբավորումների հրամ.: Բրիտ. զինվ. դատարանը դատապարտել է 18 տարվա բանտարկության, 1953-ին ազատվել է:

ՄԱՆՈՒԽԻՆ Անատոլի Իվանովիչ (1937–1992), ռուս մետաղագործ: ՌԳԱ թղթ. անդամ՝ 1979-ից: Աշխ-ները վերաբերում են պողպատահալման արտադր-յանը, պողպատի անընդհատ լցմանը, փոշեմետաղագործությանը: ԽՍՀՄ Պետ. (1969), Լենինյան (1976) մրց-ներ:

ՄԱՆՈՄԵՏՐ (< հուն. manos – ոչ խիտ, նոսր և *...մետր*), հեղուկների, գազերի և գոլորշիների ճնշման չափման սարք: Ըստ զգայուն տարրի կառուցվածքի՝ տարբերում են հեղուկ., մխոցավոր, դեֆորմացվող և զսպանակավոր (խողովակ., թաղանթ., սիլֆոն.) Մ-եր: Լինում են բացարձակ Մ-եր (չափում են բացարձակ ճնշումը՝ 0-ից հաշված), ավելցուկային ճնշման Մ-եր (տվյալ համակարգի և մթն. ճնշումների տարբերությունը), ճնշաչափներ, դիֆմանոմետրեր, վակուումաչափներ:

ՄԱՆՉԵՍՏՐ (Manchester), ք-կոմսություն Մեծ Բրիտանիայում՝ Լանկաշիրի տարածքում՝ Պենինյան լ-ների արմ. լանջին՝ Էրուել գետի ափին: Զարգացած է մեքենաշինությունը, տեքստիլ, քիմ., թեթև, թղթի, պոլիգրաֆ., սննդի արդ-յունը: Ժամանակակից Մ. հիմնադրվել է X դ-ում հինհռոմ. բնակավայրի տեղում: Պահպանվել է XV–XVI դդ-ի գոթական տաճարը:

Մ-ի հայ համայնքը ձևավորվել է 1860-ական թթ-ին: 1863-ին ընտրվել է համայնք. վարչություն, 1870-ին կառուցվել Սբ Երրորդություն եկեղեցին: 1965-ին Մ-ում բնակվել է 400 հայ, 2003-ին՝ հզ-ից ավելի: Գործում են հայկ. շաբաթօրյա և կիրակնօրյա դպրոցներ:

ՄԱՆՋԱՐՈՏՏԻ (Mangiarotti) Էդոարդո (1919–2012), իտալացի մարզիկ (սուսերամարտիկ): Օլիմպ. խաղերի 6-ակի չեմպիոն (1936, 1952–60), 5-ակի արծաթե և երկակի բրոնզե մեդալակիր՝ անհատ. և թիմ. մրցումներում, խոցասուսերի ու ճկասուսերի աշխարհի բազմակի չեմպիոն (1949–58): Եղբայրը՝ **Դարիո Մ.** (1915–2010), օլիմպ. խաղերի (1952) և աշխարհի (1937–53) չեմպիոն՝ խոցասուսերի մրցումներում:

ՄԱՆՋՈՒԿԱԿԱՆ ԸՆԿՈՒՉՆԻ, ընկուզենիների ցեղի ծառ: Բարձր.՝ 30 *մ*: Տարածված է Չինաստանում, Կորեայում, ինչպես նաև ՌԴ Պրիմորիեում և Մերձամուրում: Պտուղներն ուտելի են, օգտագործվում են հրուշակեղենի, բնափայտը՝ կահույքի արտադր-յան մեջ:

ՄԱՆՋՈՒՐԵՐԵՆ, մանջուրների լեզուն: Պատկանում է տունգուս-մանջուր. լեզվաընտանիքի մանջուր. ճյուղին: Հնագույն գիրը (վանկագիր) գործածվել է XII դ-ից: Այբուբենի հիմքում ույղուր. գրի ձևափոխված տարբերակն է:

ՄԱՆՍԱՐ (Mansart) Ֆրանսուա (1598–1666), ֆրանսիացի ճարտ.: Կառուցել է պալատներ (Մեզոն Լաֆֆիտ, 1642–51) և եկեղեցիներ, որտեղ միահյուսել է *կլասիցիզմի* սկզբունքները *բարոկկոյի* տարրերի հետ:

ՄԱՆՈՒՐՅԱՆ Արաքս Եղիայի (ծ. 1946), երգչուհի (սոպրանո): ԵՊԿ պատվ. պրոֆ. (2015): Տիգրան *Մանսուրյանի* քույրը, Շուշան *Պետրոսյանի* մայրը: 1977–92-ին՝ ԵՕՔԹ-ի, 1992-ից՝ Սիդնեյի օպեր. թատրոնի մեներգչուհի (Ադիդա, Էլիզաբեթ դե Վալուա՝ Ջ. Վերդիի «Ադիդա», «Դոն Կառլոս», Շուշան՝ Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ», ևն), միաժամանակ դասավանդում է Սիդնեյի կոնսերվատորիայում: Երգացանկում՝ հայ միջնադար., դաս. և արդի հեղինակների գործերից:

ՀՀ ՄՆ «Կոմիտաս» (2010), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի (2015) մեդալներ:

ՄԱՆՈՒՐՅԱՆ Տիգրան Եղիայի (ծ. 1939), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1984): Ժող. արտիստ (1990): Պրոֆ. (1993): Արաքս *Մանսուրյանի* եղբայրը: Մ-ի ստեղծագործությունը XX դ-ի համաեվրոպ. երաժշտության նվաճումների և ազգ. երաժշտ. մշակույթի ինքնատիպ ավանդույթների միաձուլման լավագույն օրինակ է: Նա գեղագիտ. նոր հիմքի վրա վերածնել է կոմիտասյան սկզբունքները: Հեղինակ է «Ձյունե թագուհին» (1988) բալետի, ռեքվիեմի (2011), կոնցերտների, սիմֆ., կամեր-գործիք. և վոկալ-կամեր. երկերի («Թովեմ»՝ 15 մենակատարի համար, 1979), սոնատների, վոկալ շարքերի («4 հայրեն Նահապետ Քուչակից», 1967, «Գարնան երգեր», 1993, ևն), «Արվեստ Քերթության» (խոսք՝ Ե. Չարենցի, 1997–99, երգչախմբի համար), խմբերգերի, կինոյի («Նռան գույնը», «Կտոր մը երկինք», «Հին օրերի երգը», «Մեր մանկության տանգոն» ևն) ու թատրոնի («Ջոն արքա»,

«Մեծ լռություն», «Ճերմակ անուրջներ» ևն) երաժշտության:

ՀԼԿԵՄ (1967), ՀՀ Պետ. (1981, 1985, 2013), «Վահան Թեքեյան» (2006), Ա. Խաչատրյանի անվ. (1993) մրց-ներ, ՀՀ «Մեսրոպ Մաշտոց» (1996), ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» (2004), ՀՀ Պատվո (2011) շքանշաններ:

ՄԱՆՎԵԼ ԿՅՈՒՄՈՒՇԽԱՆԵՑԻ, Ստեփանոս Գյումուշխանեցի, Շահինյան, Ալթունյան (1768–1843), մատենագիր, եկեղեց., հաս. գործիչ: Վրդ. (1796): 1827-ին՝ Էջմիածնի ձեռագրատան տնօրեն, 1828–30-ին գործել է Խոր վիրապի ու Սևանի վանքերում, 1830–36-ին՝ Թիֆլիսում, ապա՝ Ղրիմում: Հեղինակ է «Պատմութիւն անցից անցելոց Սէվանայ վանուց» (1830, հրտ.՝ 1871), «Դպրութիւն մանկանց...», «Լուծ արմատոյն մերոյ» (1832, հրտ.՝ 1841), «Նամակ Մխիթարեաններին» (1814), «Դեղաթափ ընդդէմ լիւթերականաց աղանդին» (1836) և այլ աշխ-ների: Լույս է տեսել «Անձնական պատմութիւն Մանուէլ Կիւմուշխանացի վարդապետի ...» («Դիւան հայոց պատմութեան», գիրք 12, 1917) գործը:

ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ (ծ. թ. անհտ–մոտ 385), Հայոց սպարապետ՝ 377-ից: Կարինի դաշտում հաղթել է (ըստ ներսեյթին՝ պարսկ. հեծելազորի օգնությամբ) Հայոց թագավոր ***Վարազդատին***, գահընկեց արել նրան, գերել սպարապետ ***Բակր Սահառունուն***: Հայ նախարարների համաձայնությամբ թագավոր է հռչակել Պապի անչափահաս որդի ***Արշակ Գ***-ին (378–մոտ 390)՝ ստանձնելով նրա խնամակալությունը: Ըստ Փավստոս Բուզանդի՝ Մ. Մ. ձեռք է բերել լիակատար անկախություն և 7 տարի զբաղվել խաղաղ, շին. գործունեությամբ:

ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ (ծ. թ. անհտ–838 կամ 842-ից հետո), Բյուզանդիայի զորավար: Կայսրուհի ***Թեոդորայի*** հորեղբայրը: Կայսր Միքայել II-ի օրոք (820–829) փախել է Բյուզանդիայից, ծառայել արաբ. բանակում: 831-ին ներում ստանալով՝ վերադարձել է Բյուզանդիա, նշանակվել սպարապետ: Կռվել է արաբների դեմ, մարտերից մեկում փրկել կայսր Թեոփիլոսի կյանքը: 836-ին գրավել Զապետրա, Սամոսատ ք-ները:

ՄԱՆՎԵԼՅԱՆ Երվանդ (1872–1949), մանրէաբան, համաճարակաբան, հաս. գործիչ: ՀԽՍՀ ԳԱ արտ. անդամ (1945): Աշխ-ները վերաբերում են նյարդ. համակարգի հյուսվածաբանության, ծերացման, բնածին սիֆիլիսի հարցերին: Փարիզի հայ բժիշկների ընկ-յան և Ֆրանսիայի մանրէաբանների միության անդամ:

ՄԱՆՎԵԼՅԱՆ Լևոն Գևորգի (1864–1919), գրող: Հայ գրկ-յան մեջ դրամատիկ. պոեմի սկզբնավորողը («Գալիլէ եւ Միլտոն», «Փոթորիկ», «Ռէպի վեր», 1902, «Սասունցի Դաւիթ եւ Մսրայ Մելիք», 1905): Հեղինակ է «Դոկտոր Երուանդ Բօշայեան» (1900), «Վերածնուածը» (1906), «Մագդա» (1913) և այլ պիեսների, «Տիգրանուհի» (1892) պատմադից. ողերգության, «Խորտակած կեանք» (1897) վեպի, «Ռուսահայ գրականութեան պատմութիւն» (1909–12) աշխ-յան:

ՄԱՆՎԵԼՅԱՆ Լևոն Ռաֆայելի (ծ. 1938), նյարդաֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ-ր (1989), ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2000): Ռաֆայել ***Մանվելյանի*** որդին: Աշխ-ները վերաբերում են ուղեղաբնի նյարդ. գործունեությունն ամբողջացնող մեխանիզմներին, մասնավորապես՝ դիմային նյարդի կորիզի և անդաստակային կորիզային համակարգի ուսումնասիրությանը:

Նյու Յորքի ԳԱ անդամ (1955–ից):

ՄԱՆՎԵԼՅԱՆ Հրանտ Լևոնի (1907–1995), դերասան, ռեժ.: ՀՀ ժող. արտիստ (1983): 1931–63-ին՝ Լենինականի, Կիրովականի, Սուխումի և այլ թատրոնների, 1963–86-ին՝ Արտաշատի պետ. թատրոնի դերասան (Սուրենն՝ Շիրվանզադեի «Պատվի համար», Արթուր՝ «Բոռը»՝ ըստ Է. Վոյնիչի) և ռեժ. (Ա. Ն. Օստրովսկու «Անօժիտը», Գ. Սունդուկյանի «Պեպո» ևն):

ՄԱՆՎԵԼՅԱՆ Մանվել Գարեգինի (1913–1985), քիմիկոս: Քիմ. գիտ. դ-ր (1949), ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1963, թղթ. անդամ՝ 1956–ից): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1970): ՀԽՍՀ ԳԱ ընդհ. և անօրգ. քիմիայի ինստ-ի հիմնադիր-տնօրեն (1957–68 և 1970–75-ին): Աշխ-ները վերաբերում են ոչ հանք. հանածոների համալիր օգտագործման խնդիրներին: Մշակել է նեֆելինային սիենիտների քիմ. մշակման եղանակ, ստացել նոր՝ կարբոնացված մետասիլիկատներ (երևանիտներ), որոնց օգտագործմամբ պարզեցվում է տարբեր տեխ. ապակիների և բյուրեղապակու արտադր-յունը: Առաջարկել է առանց քլորի կալիումական պարարտանյութերի (Մ-ի պարարտանյութեր) արտադր-յան տեխնոլոգիա, պղինձ-մոլիբդեն. արտադր-յան թափոնների օգտագործման ուղիներ:

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան:

ՄԱՆՎԵԼՅԱՆ Միքայել Գևորգի (1877–1944), դերասան, գրող: ՀԽՍՀ ժող. արտիստ (1935): 1905-ից՝ հիմնականում Հայոց դրամատիկ. ընկ-յան խմբի (Ֆրանց Մոոր՝ Ֆ. Շիլլերի «Ավազակներ», ևն), 1922-ից՝ Հայաստանի Առաջին պետթատրոնի դերասան (Նիկելման՝ Հ. Հաուպտմանի «Ջրասույզ զանգ», Պոլոնիուս, Յագո՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», «Օթելլո», ևն): 1926-ից նկարահանվել է կինոյում («Զարե», 1926, «Քաջ Նազար», 1940, երկուսն էլ՝ Հայֆիլմ, ևն): Հեղինակ է «Էսքիզներ» (1904) ժող-ի, «Թերթիկներ իմ կյանքից» (հրտ.՝ 1950) հուշերի անավարտ գրքի, պիեսների («Հեքիաթ», 1914, «Հրաբուխ», 1915, ևն):

ՄԱՆՎԵԼՅԱՆ Ռաֆայել Լևոնի (1897–1978), վարակաբան: ՀԽՍՀ-ում վարակաբան. ծառայության հիմնադիրը: Բժշկ. գիտ. դ-ր (1961), պրոֆ. (1962): Լևոն Ռ. ***Մանվելյանի*** հայրը: Աշխ-ները վերաբերում են աղիք. վարակների կլինիկահամաճարակաբանության խնդիրներին:

ՀԽՍՀ ԱՆ գլխ. վարակաբան, ՀԽՍՀ վարակաբանների ընկ-յան պատվ. նախագահ (1973–78):

ՄԱՆՎԵԼՅԱՆ Ռաֆայել Լևոնի (ծ. 1975), անոթաբան: Բժշկ. գիտ. դ-ր (2010): Աշխ-ները վերաբերում են երակ. վիրահատությունների և զարկերակ. ներանոթ. միջամտությունների խնդիրներին: ՀՀ-ում ներանոթ. ծայրամաս. զարկերակ. ընդլայնված վիրահատությունների հիմնադիրը:

ՄԱՆՏԵՅՖԵԼ, Պյոտր Ալեքսանդրովիչ (1882–1960), ռուս. կենսաբան, որսագետ: ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1958): Կենսատեխնիկայի հիմնադիրներից: Առաջինն է իրականացրել (1930) սամույրի բազմացումն անազատ պայմաններում: Աշխ-ները վերաբերում են արդյունագործ. գազանների և թռչունների կենսբ-յանը և էկոլոգիային: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941):

ՄԱՆՏԵՆՅԱ (Mantegna) Անդրեա (1430/31–1506), իտալացի գեղանկարիչ, փորագրիչ: Արվ-ն աչքի է ընկնում մարդասիրությամբ, անտիկ արվ-ի իմացությամբ, կառուցիկությամբ, երևակայական էֆեկտներով (Սան Զորջո դդյակի որմնանկարները, 1474): Փորագրանկարներում պլաստիկ ձևերի հստակությունը համադրել է ստվերազծերի նրբության հետ («Ծովային աստվածությունների ճակատամարտը», 7 թերթ, մոտ 1470):

ՄԱՆՏԻՍԱ (լատ.՝ mantissa – հավելորդ), տասնորդ. լոգարիթմի կոտորակ. մասը: Օր.՝ lg 300 = 2,4771, որտեղ 4771-ը Մ. է:

ՄԱՆՐ ԾՈՎԱԽԵՑԳԵՏԻՆՆԵՐ, տասնոտանի խեցգետնակերպների կարգի անողնաշարների ենթակարգ: Երկ.՝ 2–30 *սմ*: Հայտնի է մոտ 2 հզ. տեսակ՝ հիմնականում ծովերում, նաև քաղցրահամ ջրերում: Բազմաթիվ Մ. ծ. արդյունագործ. և բազմացման օբյեկտ են:

ՄԱՆՐԱԳՈՐ (Manragóra), **մարդախոտ**, մորմազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Արմատները երբեմն նմանեցնում են մարդկանց մարմնաձևին, որի համար հնում Մ-ին վերագրել են մոգական ուժ: Հայտնի է 5–6 տեսակ՝ Միջերկրածովայքում, Առաջավոր և Միջին Ասիայում, Հիմալայներում: Թուրքմենստանյան Մ. աճում է Արմ. Կոպետդաղում. ֆլորայի մնացորդային երրորդ. շրջանի բույս է: Պահպանվում է:

ՄԱՆՐԱԴԻՏԱԿ, միկրոսկոպ (< ***միկրո...*** և հուն.՝ skopio – դիտել), 1. անզեն աչքով անտեսանելի մանր առարկաների և նրանց առանձին մասերի խոշորացված պատկերն ստանալու սարք: Նախատեսված են մանրէների, օրգանիզմների բջիջների, մանր բյուրեղների, համաձուլվածքների կառուցվածքների և այլ օբյեկտների հայտնաբերման և ուսումնասիրման համար, որոնց չափերը փոքր են աչքի լուծունակության ուժի ցածրագույն սահմանից: Մ-ի խոշորացումը՝ մինչև 1500–2000 անգամ, սահմանափակված է դիֆրակցիայի երևույթներով: Տեսողության միջին սրությամբ դիտորդն անզեն աչքով լավագույն դիտման հեռ-յունից (250 *մմ*) մի մանր մասնիկը (կամ օբյեկտի տարրը) կարող է տարբերել մյուսից, եթե դրանք իրարից հեռու են առնվազն 0,08 *մմ*: **Օպտիկական Մ.** հնարավոր է դարձնում դիտել իրարից 0,25 *մմ* հեռ-յամբ գտնվող տարրերը, **էլեկտրոնային Մ.**՝ 1,01–0,1 *նմ* կարգի հեռ-յան մանրամասները: 2. Համաստեղություն երկնքի Հվ. կիսագնդում՝ Այծեղջյուր, Աղեղնավոր, Հաղիկ, Կռունկ, Հվ. Ձուկ համաստեղությունների միջև: ՀՀ տարածքից երևում է մասամբ՝ ամռանն ու աշնան սկզբներին:

ՄԱՆՐԱԹԵԼԵՐ, 1. **բնական**, բուս. (բամբակ, վուշ, կանեփաթել ևն), կենդ. (բուրդ, բնական մետաքս) և հանք. (ասբեստ) ծագման մանածագործ. թելեր: 2. **Քիմիական**, բնական պոլիմերների քիմ. վերամշակման նյութերից (արհեստ. մանրաթել) կամ սինթետիկ պոլիմերներից (սինթետիկ մանրաթել) ստացվող Մ. են: Ստանում են պոլիմերի հալույթը (պոլիամիդի, պոլիէթիլենի, պոլիօլեֆինի) կաղապարելով կամ լուծույթը (պոլիակրիլանիտրիլ, պոլիվինիլքլորիդ, պոլիվինիլ սպիրտ) ֆիլերներով արտամղելով միջավայր, որտեղ առաջացած նուրբ թելիկները պնդանում են: Հալույթների դեպքում այդպիսի միջավայր է սառը

օդը, իսկ լուծույթների դեպքում՝ տաք օդը («չոր» եղանակ) կամ հատուկ լուծույթ՝ այսպես կոչված նստեցնող լոգնոց («թաց» եղանակ): Արտադրվում են մանածագործ. և կորդային թելերի, շտապելային մանրաթելերի ու միամանաթելի ձևերով, որոնք չափազանց ամուր են, մաշվածակայուն, ջրակայուն, առաձգ. և կայուն՝ քիմ. ազդակների նկատմամբ:

ՄԱՆՐԱԹԵՓՈՒԿ (Acantalburnus microlepis), **սևահոն**, ծածանաձկների ընտանիքի ձուկ: Այսրկովկասի բնաշխարհիկ է: ՀՀ–ում տարածված է Արաքս, Ախուրյան, Մեծամոր, Հրազդան, Արփա գետերում: Երկ.՝ 12–15 *սմ*, երբեմն՝ մինչև 25 *սմ* և ավելի, զանգվածը՝ մինչև 200 *գ*: Թեփուկները մանր են, կողագծում՝ 62–87 հատ: Կազմում են մեծ վտառներ: Մնվում են ջր. անողնաշարներով, բույսերով ու դետրիտով: Արդ. նշանակություն չունի:

ՄԱՆՐԱԿԵՐՏ (ճարտ.), նախագծվող կամ կառուցված շենքի, համալիրի, քաղաքի ևնի ծավալատարած. կերտվածքը (գիպսից, փայտից, պլաստմասսայից, ստվարաթղթից են): Լինում է տարբեր մասշտաբների (երբեմն՝ բնական չափերով): Հայկ. ճարտ–յան մեջ տարածված են եղել վաղ միջնադարից:

ՄԱՆՐԱԶԿՆԵՐ, սաղմոնաձկների ընտանիքի սիգեր սեռի ձկներ: Հայտնի է 2 տեսակ՝ բալթիական կամ եվրոպ.՝ Բալթիկ ծովում ու Կարելիայի լճերում, և սիբիր.՝ Սիբիրի գետերում: 2 տեսակն էլ ունեն արդյունագործ. նշանակություն:

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ, ձեռագրային պատկերազարդում (ծաղկում), կերպարվ–ի ստեղծագործություն, որն առանձնանում է փոքր չափերով և գեղ. հնարքների նրբությամբ: Մ. կամ միջնադար. գրքարվ–ը բովանդակում է գրչագիր մատյաններում ձեռքով կատարված գծանկարներ և գունանկարներ, նաև այդ գրքերի ձևավորումները՝ անվանաթերթեր, խորաններ, լուսանցազարդեր, բուս. և կենդ. մոտիվներով տեսարաններ: Հայկ. Մ. աչքի է ընկնում ոճերի և դպրոցների բազմազանությամբ:

ՄԱՆՐԱՔՈՒՐԴ, ոսկերչության տեխնիկա՝ նուրբ ոսկեթելը կամ արծաթաթելը զարդնախշի ձևով դասավորելն ու ամրացնելը: Մ–ի եղանակով պատրաստված իրերը (գոտի, սափոր, մասնատուփ, կենցաղ. առարկաներ) զարդարվում են թանկարժեք և կիսաթանկարժեք քարերով: Հայտնի է հնուց, տարածվել է նաև Հայաստանում (Մուշ, Կարին, Վան, Երևան, Գյումրի ևն): Տես նաև *Յանցկեն*:

ՄԱՆՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀՀ ԳԱԱ, ԳՀՀ: 1997–2010–ին՝ Մանրէաբանության ինստ. (1973–ից՝ Աբովյան ք–ում): 2010–ից՝ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ–ի կազմում: Հիմնադրվել է 1961–ին՝ ՀԽՍՀ ԳԱ մանրէաբանության բաժանմունքի (1943) հիմքի վրա: Հիմն. գիտ. ուղղություններն են օգտ. միկրոօրգանիզմների կենսագործունեության ուսումնասիրությունը՝ սննդ. և կեր. նյութերի ստացման համար, նաև թափոնների վնասազերծման և օգտագործման մանրէաբան. մեթոդների մշակումն ու գործնական ներդրումը: Ինստ–ում զարգանում են կենսատեխնոլոգիայի, կենսաճարտարագիտ–յան հեռանկարային ուղղությունները՝ ավիրված լուսասուն մանրէների, մանրէային ֆերմենտների և մանրէաբան. կատալիզի ուսումնասիրմանն ու կիրառմանը: Տնօրեններ՝ Հարություն Փանոսյան, Էվրիկ Աֆրիկյան, Ժան Հակոբյան, Լևոն Մարկոսյան (2010–ից):

ՄԱՆՐԷԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, միկրոբիոլոգիա, ուսումնասիրում է միկրոօրգանիզմները, նրանց կարգաբանությունը, ձևաբանությունը, ֆիզիոլոգիան, կենսաքիմիան, գենետիկան, բնության մեջ նրանց տարածվածությունը և նշանակությունը նյութերի շրջանառությունում, նաև մարդու, կենդանիների և բույսերի հիվանդություններ առաջացնող միկրոօրգանիզմները: Մ–յան հիմնադիրը ֆրանսիացի մանրէաբան Լ. *Պաստյորն* է, Ռուսաստանում՝ Ս. Ն. *Վինոգրադսկին*: XX դ–ի կեսին Մ–յան զարգացումը պայմանավորվել է ***մոլեկուլային կենսաբանության*** նվաճումներով: ՀՀ–ում Մ. զարգացել է 1920–ական թթ–ին. 1939–ին կազմակերպվել է մանրէաբան. լաբորատորիա, որի հիման վրա 1943–ին՝ բաժին, իսկ 1961–ին՝ Մ–յան ինստ., ինչը հիմք է դարձել հանրապետությունում գղտ. (Պ. Քալանթարյան, Հ. Փանոսյան և ուր.), տեխ. (Փ. Սարուխանյան, Լ. Երզինկյան), նաև ընդհ. և կիրառ. Մ–յան (Է. Աֆրիկյան, Մ. Մալաթյան և ուր.) զարգացման համար:

Բժշկ. Մ–յան առաջընթացին նպաստել են Ա. Իսահակյանի, Բ. Ավետիքյանի, Վ. Միրզաբեկյանի, Ֆ. Ահարոնովայի, Զ. Ամյանի, Մ. Ալավերդյանի, Ն. Բաբայանի, Վ. Շեկոյանի և ուր. աշխ–ները:

ՄԱՆՐԷԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ, մշակաբույսերի համար օգտ. մանրէները պարունակող պատրաստուկներ, օր.՝ նիտրագին, ոիզոտորֆին, ֆոսֆորաբակտերին: Խթանում են հողի կենսաքիմ. շարժընթացները և բարելավում բույսերի արմատ. սննդառությունը: Հող են ներմուծվում սերմերի հետ:

ՄԱՆՐԷՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, մանրէների դիմացկունությունն արտաքին միջավայրի անբարենպաստ գործոնների նկատմամբ: Մանրէների՝ սպոր առաջացնող ձևերն ավելի կայուն են, քան վեգետատիվ ձևերը: Տիֆի, խոլերայի, բակտերիային դիզենտերիայի հարուցիչները գոյություն ունեն միայն վեգետատիվ ձևով և զանազան պայմաններում կենսունակությունը պահպանում են վայրկյաններից մինչև մի քանի ամիս: Ախտածին մանրէներն ունեն տարբեր կայունություն հակաբիոտիկների և սուլֆանիլամիդային պատրաստուկների նկատմամբ, որը կարևոր է գործն. բժշկության մեջ: Մ. կ–յանը մեծ ուշադրություն է դարձվում գործն. համաճարակաբանության մեջ, քանի որ արտաքին միջավայրում նրանց գոյությամբ են պայմանավորված վարակիչ հիվանդության օջախի գոյացումն ու հետագա տարածումը:

ՄԱՆՐԷՆԵՐԻ ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, միկրոօրգանիզմների ձևաբան., ֆիզիոլոգիակենսաքիմ. և այլ հատկությունների փոփոխություններն աճման և զարգացման կենսընթացներում: Կենդ. աշխարհի հիմն. հատկանիշներից է, որոշվում է ժառանգ. գործոններով՝ արտաքին միջավայրի ազդեցության տակ: Ժառանգ. գործոնների վրա նպատակադրված ներգործելով փոխում են մանրէների ախտածին հատկությունները և փոփոխված մանրէներն օգտագործում զանազան վարակիչ հիվանդությունների կանխարգելման համար:

ՄԱՆՐԻԿԵ (Manrique) Խորխե (մոտ 1440–1479), Վաղ Վերածննդի դարաշրջանի իսպանացի բանաստեղծ, մարտիկ: «Բանաստեղծություններ հոր մահվան կապակցությամբ…» (հրտ.՝ 1492) պոեմը իսպ. քնարերգության խոշորագույն հուշարձան է: Զոհվել է թագավոր. հարստությունների երկպառակությունների ժամանակ:

ՄԱՆՐԻԿՅԱՆ Միքայել Երվանդի (ծ. 1984), ստոմատոլոգ–օրթոդոնտ: Բժշկ. գիտ. դ–ր (2014): Մարինա ***Մարգարյանի*** որդին: Ուսումնասիրությունները վերաբերում են մանկ. ստոմատոլոգ. և օրթոդոնտ. հիվանդությունների կանխարգելմանը և բուժման մեթոդների մշակմանը:

ՄԱՆՐՈՒՍՈՒՄ, մանրուսմունք, հայկ. միջնադար. երաժշտածիս. մատյան, խազգիրք: Տարածվել է XII դ–ից: Նշանավոր կենտրոններն ստեղծվել են Կիլիկյան Հայաստանում՝ ***Ներսես Շնորհալու*** նախաձեռնությամբ: Մ–ման երգերի (ժամամուտ, ալելու, մեղեդի, փառք, եղիցի, Պատարագի սրբասացություն) խազավորումն աչքի է ընկնում խիտ և ճոխ կառուցվածքով: Մ–ման մատյանները հայկ. միջնադար. երաժշտության և մասնավորապես՝ խազագրության ուսումնասիրության կարևորագույն աղբյուրներից են:

ՄԱՆՅՈՒ (Manzù) Ջակոմո (1908–1991), իտալացի քանդ.: ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի պատվ. անդամ (1967): Հեղինակ է «Կարդինալները» շարքի (1950–ից): Գործերում արտահայտել է մարդու՝ բռնության դեմ և ազատության համար պայքարի գաղափարները (Հռոմի Սբ Պետրոսի տաճարի «Մահվան դարպասները», 1964–67): Լենինյան միջազգ. մրց. (1966):

ՄԱՆՈՒԵԼ, X դ–ի ճարտ., քանդ., նկարիչ: Ստեղծագործել է Վասպուրականում, եղել Արծրունյաց տան գլխ. ճարտ–ը: Կառուցել է Ոստան ք–ը և նրա պալատ. համալիրը, Աղթամարի պալատը (ղեկավարել է նաև ներքին ձևավորման աշխ–ը), հարակից շենքերը և Սբ Խաչ եկեղեցին: Վերջինս արվ–ների համադրության կատարյալ օրինակ է միջնադար. Հայաստանում և հնագույնը՝ քրիստ. արվ–ում ընդհանրապես:

ՄԱՆՈՒԵԼ, **Նաղաշ Մանուել**, XV դ–ի մանրանկարիչ, Տփղիսի հայ գրչության դպրոցի ներկայացուցիչ: Աշխատել է նաև Կիլկեթում, Հաղպատում: Ծաղկել է 1452–ի (ձեռ. № 6806), 1459–ի (ձեռ. № 7986) Ավետարաններ, 1458–ի Շաշոց (ձեռ. № 6260), նաև 1293–ին Սկևռայում ընդօրինակված Ավետարանի (ձեռ. № 5784, բոլորը՝ Մատենադ–ում) տերուն. պատկերները (1445, «Ավետում», «Ծնունդ» ևն), որոնց բնորոշ են հորինվածքների ինքնատիպ կառուցվածքը, գուն. նուրբ համադրությունները: 1 ձեռագիր պահվում է Ստոկհոլմում, 1463–ի Ավետարանը (ձեռ. № 209)՝ Սբ Էջմիածնում:

ՄԱՆՈՒԵԼ ՄՐՄԱՔԵՇ ԿԵՍԱՐՅԱՆ, **Մանուել դպիր Կոստանդնուպոլսեցի**, XIII դ–ի աստվածաբան, քարոզիչ: Հեղինակ է կրոնադավանաբան., քրիստ. վարդապետության երկերի, որոնք վերաբերում են Հայ առաքել. և կաթոլիկ. եկեղեցիների ծիս. հարցերին (մկրտություն, հաղորդություն, մյուռոն, Սբ Երրորդություն, ծիսակատարություններ, պատարագ ևն). տպագրվել են ոչ միայն հայ., այլև հայատառ թուրք.:

ՄԱՆՈՒԵԼՅԱՆ Մակարե Մեկենասի (1929–1980), ճարտ.: ՀԽՍՀ վաստ. ճարտ. (1972): Նրա նախագծերով Երևանում կառուցվել են ՀՀ ԳԱԱ մաթ-ի և մեխանիկայի, երկրբ-յան ինստ-ների շենքերը (1960-ական թթ.), Երկաթուղայինների մշակույթի տունը (1966), Աշտարակում՝ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ԳՀԻ-ն (1962–65), ֆիզ. հետազոտությունների ինստ-ի համալիրն ու բնակելի ավանը (1965), Սևան ք-ի մուտքը ևն: Համամիութ. ճարտ. նվաճումների ստուգատեսների դափնեկիր (1969–73) ևն:

ՄԱՆՈՒԻԼ I Կոմնենոս (1123–1180), Բյուզանդիայի կայսր՝ 1143-ից՝ Կոմնենոսների հարստությունից: Մ. I-ի կառավարման սկզբին *Թորոս Բ*-ն Կիլիկիայից վտարել է բյուզանդացիներին, ընդարձակել իշխանության սահմանները: 1152-ին զորավար Անդրանիկոս Կոմնենոսն արշավել է Կիլիկիա և Մամեստիայի մոտ պարտվել հայերին: Մ. I 1159-ին դաշնակցել է Թորոս Բ-ի և Երուսաղեմի թագավորի հետ՝ Հալեպի ամիրա Նուր ադ Դինի դեմ: Դիմել է ՀԱԵ պետերին հայ և բյուզ. եկեղեցիների միության հարցով ու մերժվել:

ՄԱՆՈՒԻԼ, տես *Տափաստանային կապտու*:

ՄԱՆՈՒԿ ԲԵՅ (Միրզայան Սանուկ Սարտիրոսի, 1769–1817), դիվանագետ, առևտրական: Գործուն մասնակցություն է ունեցել 1812-ի *Բուխարեստի հաշտության* պայմանագրի կնքմանը (տեղի է ունեցել իր տանը): Այցելել է Հայաստան, նյութապես օգնել է Սբ Էջմիածնի, Մուշի, Երուսաղեմի և այլ վանքերի: Բուխարեստում հիմնադրել է (1817) 1-ին հայկ. դպրոցը: Այստեղ Մ. Բ-ի անունով կոչվել է փողոց, Ռումինիայում՝ 2 գյուղ:

«ՄԱՆՈՒԿ ՀԱՅԱՍՏԱՆ», «Երիտասարդ Հայաստան», ազատագր. գաղտնի խմբակ: Հիմնադրվել է 1859-ին Ս. Պետերբուրգում: Անդամներից էին Միքայել Նալբանդյանը, Մովսես Բուրդաղյանը, Ռափայել Պատկանյանը, Կարապետ Եզյանը և ուր.: Նպատակը Հայաստանը ռուս. և թուրք. տիրապետությունից ազատագրելն էր: Գոյատևել է մինչև Մ. Նալբանդյանի մահը (1866), որից հետո՝ ցրվել:

ՄԱՆՈՒԿ ՊՈՆՏԱՑԻ (Բժշկյան, ծ. և մ. թ. անհտ), XVII դ-ի բժիշկ: Զբաղվել է գործն. բժշկությամբ: Գրել է ձեռագիր 2 գիրք՝ մեկը՝ անատոմիայի, մյուսը՝ դեղերի մասին: Առաջինը գրել է ըստ Ամիրդովլաթի, հույն և արաբ բժիշկների աշխ-ների. ներկայացրել է բազմաթիվ օտար բժշկ. եզրույթներ, 2-րդը դեղատոմսերի ժող. է՝ հիվանդությունների համառոտ նկարագրությամբ և դեղորայք. բուժումով:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Ազատ Մինասի (1878–1958), կոմպոզիտոր, մանկավարժ, խմբավար: ՎԽՍՀ (1936), ՀԽՍՀ (1952) արվ. վաստ. գործիչ, վաստ. ուսուցիչ (1952): ՀԽՍՀ աշխ. հերոս (1935): Աշակերտել է Ք. Կարա-Մուրզային: «Երաժշտական լիգա»-ի հիմնադիրներից է: Հեղինակ է մանկ. երգերի և խմբերգերի, մանկ. օպերաների («Չարի վերջը», 1936, «Ոսկե ձկնիկի հեքիաթը», 1937, «Համառ գորտը», 1946, ևն): Կազմել և հրատարակել է «Դպրոցական երգարան» (1940):

ՄԱՆՈՒԿՅԱՆ Ալեք Թագվորի (1901–1996), հաս. գործիչ, մեծահարուստ բարերար, ճարտարագետ, արդյունաբերող: Հայաստանի Ազգ. հերոս (1994): Լուիզ *Մանուկյան–Սիմոնի* հայրը: 1953–89-ին՝ ՀԲԸՄ կենտր. վարչ. ժողովի նախագահ, 1970-ից՝ ցկյանս նախագահ (1989-ից՝ ցկյանս պատվո նախագահ): «*Հայաստան» համահայկական հիմնադրամի* հոգաբարձուների պատվո անդամ էր. հիմնադրամին է նվիրել 500 հզ. ԱՄՆ դոլար:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Աղասի Յոլակի (ծ.1967), մարզիկ (ըմբշամարտ): ԽՍՀՄ ս. վ. (1984), ս. վ. վ. (1993): Ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի գավաթակիր (1989), չեմպիոն (1993):

ՄԱՆՈՒԿՅԱՆ Անդրանիկ Ալեքսանդրի (1917–1986), գվարդիայի կապիտան: ԽՄ հերոս (1945): Հերոսի կոչման արժանացել է 1945-ի հունվ-ին Լեհաստանում մղված մարտերի ժամանակ հետախուզ. գործողությունների համար: Մասնակցել է Օդերի գետանցմանը, Բեռլինի գրավմանը:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Աշիկ Ավետի (1903–1977), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (1963), պրոֆ. (1966): 1935–39-ին՝ ԽՍՀՄ արտաքին առևտրի մենաշնորհի ինստ-ի տնօրեն, 1956–77-ին՝ ԽՍՀՄ ԳԱ համաշխ. տնտեսագիտ-յան և միջազգ. հարաբերությունների ինստ-ի բաժնի վարիչ: Աշխ-ները վերաբերում են համաշխ. տնտեսագիտ-յան հարցերին:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Աշոտ Լևոնի (ծ. 1968), տնտեսագետ: Տնտեսագիտ-յան դ-ր (2008): Աշխ-ները վերաբերում են բանկ. վերահսկողության համակարգի արդյունավետության և զարգացման ուղղություններին:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Արամ (Հովհաննիսյան Սարգիս, 1879–1919), պետ., հաս. գործիչ: ՀՅԴ կուս-յան անդամ: Ղեկավարել է 1915-ի *Վանի հերոսամարտը*, որի ավարտից հետո՝ Վանի նահանգապետությունը (գոյատևել է 70 օր): 1917-ին, որպես *Հայոց ազգային խորհրդի* լիազոր ներկայացուցիչ, ժամանել է Երևան, 1918-ի մարտին ընտրվել է դիկտատոր: Սարդարապատի և Բաշ Ապարանի ճակատամարտերի (մայիս) ժամանակ ապահովել է հայկ. բանակի թիկունքը: ՀՀ հռչակումից (մայիսի 28) հետո ղեկավարել է երկիրը մինչև հուլիսի 23-ը, երբ Թիֆլիսից Երևան է ժամանել Հովհաննես *Քաջազնունու* կառ-յունը: Եղել է ՆԳ նախարար: Մահացել է տիֆից:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Արմենն Հակոբի (ծ. 1959), դեղաբան: Բժշկ. գիտ. դ-ր (2004), պրոֆ. (2005): Աշխ-ները վերաբերում են գամմա-ամինակարագաթթվի ու նրա ցիկլիկ ածանցյալների ուղեղային-պաշտպ. ազդեցության խնդիրներին, սակավաշարժության պայմաններում ուղեղի արյան շրջանառության խանգարման մեխանիզմների բացահայտմանը և բուժմանը: Համահեղինակ է «Դեղաբանություն» (անգլ., հ. 1–2, 2003–04) գրքի:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Արմենակ Սարիբեկի (գր. անունը՝ **Արման Ամրիկյան**, ծ. 1950), պատմաբան, գրող, հրապարակախոս, ԱԱԾ գնդ. (1991): Պատմ. գիտ. դ-ր (2002), պրոֆ. (2006): Սարիբեկ *Մանուկյանի* որդին: 1991–2003-ին՝ ՀՀ ԱԱԾ լրատվ. կենտրոնի պետ: Աշխ-ները հիմնականում վերաբերում են խորհրդ. ժամանակաշրջանի քաղ. հետապնդումներին, հետախուզության պատմությանը: Լույս է ընծայել պատմվածքների ու վիպակների ժող-ներ և այլ գործեր:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Գուժ Ալեքսանդրի (ծ. 1937), դերասան: ՀՀ ժող. արտիստ (1980): Ալեքսանդր *Արաբամանյանի* որդին, Էմանվել *Արաբաման–Մանուկյանի* եղբայրը: 1959–1967-ին՝ ԵՊՀԹ, 1967-ից՝ ԵԴԹ դերասան (Միտրոֆան՝ Դ. Ի. Ֆոնվիզինի «Տհասը», Բուկինգհայմ՝ Վ. Շեքսպիրի «Ռիչարդ III», Տիգրան Մեծ՝ Պ. Զեյթունցյանի «Աստվածների կանչը», Վասիլ՝ Լ. Շանթի «Կայսր», ևն): Բեմադրել է Ի. Ժամյակի «Մայո Ամիլկար» (1989) պիեսը, նկարահանվել կինոյում («Սգավոր ձյունը», 1978, «Կյանքի լավագույն կեսը», 1979, «Հին օրերի երգը», 1982, բոլորը՝ Հայֆիլմ, ևն):

ՀՀ Պետ. (1981), ՀԹԳՄ «Արտավազդ» (2012) մրց-ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (1998):

ՄԱՆՈՒԿՅԱՆ Գուրգեն Մուշեղի (1934–2012), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ-ր (2008): Հեղինակ է «Նախդրագործածությունը 5–10-րդ դարերի և միջին հայերենյան հայոց չափածոյում» (2005), «Գրաբարի նախդիրները և նրանց գործածությունը Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» աշխատությունում» (2006) և այլ աշխ-ների:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Էդվարդ Վահանի (1908–1993), բալետմայստեր: ՀՀ ժող. արտիստ (1965): 1927–32-ին՝ Երևանի Վահրամ Արիստակեսյանի Ազգագր. պարի անսամբլի, 1932–38-ին՝ ԵՕԹԹ-ի մենապարող, 1938–58-ին՝ Հայկ. ժող. երգի-պարի, 1958–66-ին՝ Հայաստանի պարի անսամբլների, 1966–68-ին՝ Հայհամերգի գլխ. բալետմայստեր: Բեմադրել է հայկ. ժող. պարեր («Քոչարի», «Ուզունդարա», «Տրնգի», «Նազելի» ևն), որոնք ազգ. պարի բեմադրման դաս. նմուշներից են: Երիտասարդության և ուսանողների համաշխ. VI փառատոնի 1-ին մրց. (Մոսկվա, 1957):

ՄԱՆՈՒԿՅԱՆ Էդուարդ Միհրանի (1913–2010), տիեզ. կապի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1958), պրոֆ. (1963): Առաջարկել և տեսականորեն հիմնավորել է ռադիոկապի միակ գծի չափման փաթեթավորված իմպուլս. ազդանշաններից հրթիռի արագության վերաբերյալ տեղեկությունների ստացման եղանակ: Տիեզ. համակարգերի էներգետիկայի բարձրացման նրա առաջարկած եղանակը կիրառվել է «Զոնդ» տիպի հրթիռներում: Տեղեկագիտ-յան միջազգ. ակադ-ի անդամ (1992):

Լենինյան մրց. (1957), Լենինի (1961), ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (1967) շքանշաններ:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Էդուարդ Նշանի (ծ. 1945), ճարտարագետ-մաթեմատիկոս: Տեխ. գիտ. դ-ր (1985), պրոֆ. (1992): Աշխ-ները վերաբերում են արհեստ. բանականության համակարգերի ստեղծմանը, կիրառմանը՝ հայ-անգլ. երկկողմանի իմաստային թարգմ-յուններում:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Թորգոմ (1919–2012), Երուսաղեմի հայոց պատրիարք՝ 1990-ից, արք. (1968, եպս.՝ 1962-ից): 1966–90-ին՝ ՀԱԵ Ամերիկայի Արլ. թեմի առաջնորդ: 1990-ից՝ «*Միտն*» ամսագրի գլխ. խմբ.: 1994–95-ին՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի կաթողիկոս. տեղապահ: Համակարգել ու կազմակերպել է Սպիտակի երկրաշարժից (1988) տուժածներին միջազգ. ֆին. և նյութ. օգնությունը: Հեղինակ է «Խումբին հետ (Հաւատքի կայծեր)» (1952), «Հայ եկեղեցու կորուստը Եղեռնին» (1972), «Վանքի օրեր» (2001), «Կոմիտասի հանճարը իր պատարագին մէջ» (2003) ուսումնասիրությունների և այլ երկերի:

ԱՄՆ «Ազատության արձան» և «Էլիս Այլընդ» պատվո (երկուսն էլ՝ 1986), ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2010) շքանշաններ:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Լաուրա Արմենակի (ծ. 1936), անատոմ: Բժշկ. գիտ. դ-ր (1977), պրոֆ. (1978): Աշխ-ները վերաբերում են ձուսպաթաղանթների միկրոշրջանառությանը: Մշակել և ներդրել է անոթների հայտնաբերման հյուսվածքաքիմ. եղանակ: Համահեղինակ է «Անկանոնությունների (անոմալիաների) լատիներեն-ռուսերեն-հայերեն բժշկական տերմինաբանական բառարանի» (2003):

ՀՀ «Մխիթար Հերացի» մեդալ (2000):

ՄԱՆՈՒԿՅԱՆ Լիպարիտ Խաչատուրի (1909–1979), անատոմ: Բժշկ. գիտ. թեկնածու (1953): Հայտնաբերել է պարանոց. նյարդաանոթ. կապոցի տեղադրության մի քանի տարբերակներ, որոնք մեծ նշանակություն ունեն գործն. վիրաբուժության համար:

ՀԽՍՀ անատոմների, հյուսվածաբանների և սաղմնաբանների ընկ-յան փոխնախագահ (1966–79):

ՄԱՆՈՒԿՅԱՆ Լևոն Անդրանիկի (ծ. 1947), ճարտարագետ: Տեխ. գիտ. դ-ր (2008): Աշխ-ները վերաբերում են մետաղ. օգտ. հանածոների հանքավայրերի պաշարների մշակման, լ-հանք. արդ-յան ձեռն-ների ճարտարագիտ. կառույցների արդյունավետ ու անվտանգ շահագործման խնդիրներին:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Լևոն Խանաևի (1938–1992), խմբ., արձակագիր: 1970–85-ին՝ «Ավանգարդ» թերթի խմբ., 1985–92-ին՝ Արմենպրեսի փոխտնօրեն: Հեղինակ է «Մի սովորական օր» (1971), «Եռանկյունի տիեզերք» (1977), «Լեռան մյուս կողմում» (1985), «Մասսյաց գիրք» (1990) պատմվածքների, «Յոտեսություն, Լիլիկ» (1973), «Ծննդյան յոթ օր» (1982), «Հոգու խճանկար» (1983) վիպակների, հոդվածների ժող-ների: ՀԺՄ «Ոսկե գրիչ» մրց. (1984):

ՄԱՆՈՒԿՅԱՆ Լևոն Կառլենի (ծ. 1956), ռադիոտեխնիկայի բնագավառի ճարտարագետ, տնտեսագետ, փիլ.: Տնտեսագիտ. դ-ր, պրոֆ. (2000): ՌԴ պետ. անվտանգության գեն-լեյտ.: ՌԴ կապի վաստ. աշխատող (1996): Աշխ-ները վերաբերում են պետ. նամականիշների հրատարակման և տարածման տնտեսագիտ. հարցերին:

Տեղեկատվայնացման միջազգ., ՌԴ Կ. Է. Ցիոլկովսկու անվ. տիեզերաբանության (1988) ակադ-ների անդամ:

ՌԴ Պետրոս Մեծի 1-ին և 2-րդ աստիճանների (2003), Մալթայի ուխտի (2003) շքանշաններ, Ֆրանսիայի «Նապոլեոն Բոնապարտ» մեդալ (1988):

ՄԱՆՈՒԿՅԱՆ Կառլեն Ղևոնդի (ծ. 1933), մարզիկ (բասկետբոլ), մարզիչ, մանկավարժ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1953), ՀՀ վաստ. մարզիչ (1965): Մանկավարժ. գիտ. թեկնածու (1967), պրոֆ. (1996): Աշխ-ները վերաբերում են մարզախաղերի տեսության և մեթոդաբանության հարցերին: Հայաստանի բասկետբոլի տղամարդկանց (1976) և կանանց (1986) ազգ. հավաքականների գլխ. մարզիչ: ՀՀ բիլիարդի ֆեդերացիայի նախագահ (1992):

ՄԱՆՈՒԿՅԱՆ Հակոբ Բալաբեկի (1916–1981), ավիացիայի մայոր: ԽՄ հերոս (1946): 1938-ին մասնակցել է Խասան լճի (ՌԴ Պրիմորիեի երկրամաս) շրջանում, 1942-ի վերջից (որպես էսկադրիլիայի հրամ.)՝ ՀՄՊ-ին: Հերոսի կոչման արժանացել է էսկադրիլիայի մարտերը հմտորեն ղեկավարելու և ցուցաբերած անձն. խիզախության համար:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Հովիկ Ալբերտի (ծ. 1968), սամբիստ: ԽՍՀՄ ս. վ. (1990), ՀՀ ս. վ. վ. (2000): Աշխարհի (1991, 1993, 1995), Եվրոպայի (1991, 1994, 1995), ԽՍՀՄ ժողդ-ների սպարտակիադաների (1991) չեմպիոն:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Հրաչիկ Հարությունի (1941–2002), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր, պրոֆ. (2000): Հեղինակ է «Խորհրդային Հայաստանի աշխատավորության ավանդը Հայրենական մեծ պատերազմի հաղթանակում (1941–45)» (2000) և այլ աշխ-ների:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Մամիկոն Հակոբի (1927–1995), դերասան: ՀՀ վաստ. արտիստ (1972): 1950–56-ին՝ ԵՊՀԹ, 1956-ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասան (Դը Սանթոս՝ Կ. Ֆ. Գուցկովի «Ուրիել Ակոստա», Մենեւեւս Ագրիպա՝ Վ. Շեքսպիրի «Կորիոլան», Մուրադ՝ Ժ. Հարությունյանի «Հարսնացու հյուսիսից», ևն): Խաղացել է հեռուստաթատրոնում, նկարահանվել կինոյում («Սայաթ-Նովա», 1960, «Երջանկության մեխանիկա», 1982, «Որտե՞ղ էիր, մարդ Աստծո», 1992, բոլորը՝ Հայֆիլմ): ԽՍՀՄ Պետ. մրց. (1981):

ՄԱՆՈՒԿՅԱՆ Մանուկ Թորոսի (1924–2010), երաժշտագետ: Երաժշտագիտ. թեկնածու (1969): Ուսումնասիրությունները վերաբերում են ժող. և աշուղ. երգարվ-ի հարցերին: Հեղինակ է «Անտոն Մայիլյան» (1965), «Հայաստանի գուսանները» (ռուս., 1977), «Ժողովրդական ավետիսներ» (1995), «Սիմոն Հովհաննիսյան» (2000) և այլ աշխ-ների:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Մարտիրոս Արարատի (ծ. 1947), նկարիչ: Հեղինակ է «Չվերադարձավ» (ՀՄՊ-ում հաղթանակի 40-ամյակին նվիրված ցուցահանդեսի 1-ին մրց., 1985), «Խոստում», «Նկարչի գաղտնիքը» (երկուսն էլ՝ 1986), «Գարուն» (1995), «Սաթե երազ» (1997) և այլ գեղանկարների: 1987-ից՝ ԱՄՆ-ում:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Միքայել Մանուկի (1911–1976), մեխանիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1956), պրոֆ. (1966): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1970): Աշխ-ները վերաբերում են ծերացող նյութերի սողքի ժառանգականության տեսությանը:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Մնացական Միքայելի (ծ. 1935), մանկավարժ: Մանկավարժ. գիտ. դ-ր (1996), պրոֆ. (2000): ՀՀ վաստ. մանկավարժ (2007), Հայաստանի ՄԳԱ փոխնախագահ (2000-ից): Աշխ-ները վերաբերում են կրթության համակարգի կառավարմանն ու արտադպրոց. դաստիարակության հարցերին: Անձն. մտերմություն է ունեցել Վ. Ա. *Սուխոմլինակու* հետ:

ՀՄՊՀ «Խաչատուր Աբովյան» (1966), ՀՀ ԿԳՆ (2003) մեդալներ:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Նիկոլայ Արկադիի, **Նիկո** (ծ. 1949), նկարիչ: Հեղինակ է գրքերի ձևավորումների (Ա. Շեկոյանի «Ավարայրի լույսը», Գ. Եղիկյանի «Կիլիկո», «Մահաբհարատա» ևն), գեղանկարների («Արևածաղկի դաշտ», «Լուսնի սոնատ», «Դիմակահանդես» ևն), ծաղրանկարների: Բրոնզե մեդալ (1970, Ճապոնիա):

ՄԱՆՈՒԿՅԱՆ Նիկոլայ Վահանի (ծ. 1930), փոշեմետալուրգիայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1973), պրոֆ. (1975): ՌԲՆԳԱ անդամ (1998, տեխ. գիտ-յունների բաժանմունքի քարտուղար): Աշխ-ները վերաբերում են երկաթի հիմքով մետաղ. փոշիների ու թելանման բյուրեղների ստացման և դրանցից նոր մեքենաշին. նյութերի ու շինվածքների պատրաստման հարցերին:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Ռազմիկ Սիսակի (ծ. 1936), ճարտ.: Նախագծերով Երևանում կառուցվել են բնակելի տներ (1965–72), «Արաքիր» մանկ. հիվանդանոցի համալիրում՝ մանկ. պոլիկլինիկա (1972–73), հիվանդանոց՝ Նոր Արեշ թաղամասում (1976–81, ճարտ. խմբի ղեկ.), Հալեպում՝ հիվանդանոց (1984–85), Դամասկոսում՝ Վարակիչ հիվանդությունների ուսումնասիրման կենտր. լաբորատորիան (1985–87):

ՄԱՆՈՒԿՅԱՆ (Մանուկով) Ռաֆայել Գեորգիի (1912–1953), կրկեսի արտիստ, էկվիլիբրիստ: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1940): Վաղ տարիքից աշխատել է ակրոբատիկ. խմբերում, ապա եղել էկվիլիբրիստների բարդ համարների մասնակից և ղեկ.:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Ռոբերտ Խաչատուրի (ծ. 1929), նկարիչ: Հեղինակ է կոմպոզիցիոն գործերի («Նախօրեին», 1970, «Նավզիկե», 2002, «Մեսրոպ Մաշտոց», 2004), գրաֆիկ. թերթերի («Իսկրա», եռապատկեր, 1971, «Հայկական պար»), 1988-ի երկրաշարժին նվիրված եռապատկերի (1990, լիտոգրաֆիա ևն), գրքերի ձևավորումների:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Ռոբերտ **Կրտսեր** (ռինգի անունը՝ Բոբի Մանագով, 1918–2002), ամերիկահայ պրոֆեսիոնալ ըմբշամարտիկ: 1940-ական թթ-ին հանդես է եկել «National Wrestling Alliance» (NWA) համազգ. ցանցում, 1942-ին՝ NWA չեմպիոն:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Ռուբեն Խաչատուրի (1906–1978), ծանրորդ, մրցավար: ԽՍՀՄ ս. վ. վ. (1942): Ռուզաննա ***Մանուկյանի*** հայրը: Աշխարհի և ԽՍՀՄ ռեկորդակիր (1937, միջին և կիսածանր քաշ. կարգերում՝ ձախ ձեռքով պոկում վարժությունից):

ՄԱՆՈՒԿՅԱՆ Ռուբեն Սոսի (ծ. 1940), նկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (1990): Հեղինակ է «Ճոճանակ» (1974), «Վերածնունդ» (1988), «Երկնային ֆանտազիա» (1995), «Վարդագույն երազներ» (2001), «Աշուն» (2004) գործերի, նաև գրքերի ձևավորումների (Հ. Թումանյանի «Սուտասանը», Վ. Անանյանի «Եղնիկի ձագը» ևն):

Դուստրը՝ **Ալեքսանդրա Մ.** (ծ. 1976), գեղանկարիչ-գրաֆիկ («Ալեքսանդրա», 1997, «Կապույտ դիմակ», 1998, «Առլեկին», 1998, «Կարմիր մոլորակ», 2005, ևն):

ՄԱՆՈՒԿՅԱՆ Ռուզաննա Ռուբենի (ծ. 1948), գյուղատնտես: Գղտ. գիտ. դ-ր (1997), պրոֆ. (2008): Ռուբեն Խ. ***Մանուկյանի*** դուստրը: Աշխ-ները վերաբերում են Արարատյան դաշտի աղուտ-ալկալի հողերի բարելավման, բերրիության և մշակաբույսերի բերքատվության բարձրացման խնդիրներին:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Սարգիս Նազարի (1883–1938), մանկավարժ, գրականագետ, թարգմանիչ: Պրոֆ. (1935): Հեղինակ է գրականագիտ. աշխ-ների: Կատարել է թարգմ-ներ (Հ. Հայնեի «Երգերի գիրք», 1935, տողացի, Յ. Վ. Գյոթեի «Ֆաուստ», 1936, Ե. Չարենցի հետ, անավարտ է): Հրտ-յան է պատրաստել Հ. Պարոնյանի երկերի 1-ին գիտ. հրտ-յունը՝ ծնթգր-ներով:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Սարիբեկ Արմենակի (1917–2002), գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1972): Արմենակ ***Մանուկյանի*** հայրը: Հեղինակ է «Գեղամ Սարյան» (1954), «Պերճ Պռոշյան» (1964), «Լևոն Բաշալյան» (1969), համահեղ.՝ «Ակնարկներ հայ գրականության պատմության» (1984) և այլ աշխ-ների: Մասնակցել է «Հայ նոր գրականության պատմություն» (հ.

4–5, 1972–79) ակադեմ. բազմահատորյակի ստեղծմանը: ՀԽՍՀ Պետ. մրց. (1980):

ՄԱՆՈՒԿՅԱՆ Սոս Մնացականի (1911–1985), ճարտ.: ՀԽՍՀ վաստ. ճարտ. (1961): Համահեղինակ է Վաղարշապատի (1938–39), Սևանի (1940), Հրազդանի (1978–80) գլխ. հատակագծերի: Նախագծերով կառուցվել են Թումանյանի հրակայուն նյութերի (1945–55), Երևանի «Կանազ» (1948–52) գործարանների բանավանները, մշակույթի պալատներ՝ Երևանում, Էջմիածնում, Աշտարակում, ՀՄՊ-ում զոհվածներին նվիրված հուշակոթողը Ծովագյուղում (1967) և այլ կառույցներ:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Վազգեն Միքայելի (ծ. 1946), քաղ., պետ. գործիչ: ՀՀ 1-ին վարչապետ՝ 1990–91-ին: Ֆիզմաթ. գիտ. թեկնածու (1985): 1988-ից՝ «*Ղարաբաղ*» կոմիտեի անդամ, համակարգող: ՀՀՇ հիմնադիր անդամ և վարչության 1-ին նախագահը (1989–90): ԱԺՄ կուս-յան հիմնադիր-նախագահ (1991): 1992–93-ին՝ ՀՀ անվտանգության գծով պետնախարար, ՀՀ պաշտպ-յան նախարարի պաշտոնակատար, ռազմ. արդ-յան համալիրի ղեկ.: 1992–98-ին գլխավորել է Ռազմավար. հետազոտությունների կենտրոնը: 2009-ից՝ ՀՀ հանր. խորհրդի նախագահ:

ՀՀ «Տիգրան Մեծ» շքանշան (2016):

ՄԱՆՈՒԿՅԱՆ Վարդ (Ռոզա) Գևորգի (ծ. 1955), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2017): Հովիկ *Հովկյանի* կինը: Հեղինակ է «Վահագնին» օրատորիայի, «Միրկահավ» (խոսք՝ Վ. Տերյանի), «Հաղթական» պոեմների, «Սասունցիներ» ռապսոդիայի, «Խոստովանություն» սիմֆոնիայի, կամեր-գործիք. երկերի, վոկալ շարքերի և այլ գործերի:

Համամիութ. (2-րդ մրց., 1978, կրկնակի, 3-րդ մրց., 1980) և հանրապետ. (3-րդ մրց., 1986) մրցույթների դափնեկիր:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Փայլակ Սարգսի (1909–1993), ճարտ.: ՀՀ վաստ. շինարար (1961): Հեղինակ է Գյումրիի (1938–40), Աշտարակի (1949), Ջերմուկի (1952) և այլ բնակավայրերի գլխ. հատակագծերի, Երևանում՝ բնակելի, ուս., վարչ. շենքերի, Գյումրիում՝ «Անտառային» բնակելի թաղամասի, Վանաձորում՝ դպրոցի, հանրախանութի և այլ նախագծերի:

ՄԱՆՈՒԿՅԱՆ (**Գյումրեցի**) Ֆերդինանդ Հովսեփի (ծ. 1941), նկարիչ: ՀՀ ժող. նկարիչ (2015): 1968–72-ին՝ Գյումրիի գլխ. նկարիչը: Հեղինակ է որմնանկարների («Մուտք Գյումրի», 1970, ևն), խճանկարների («Սասունցիների պարը», 1973–75, ևն), գեղանկարչ. գործերի («Նատյուրմորտ», «Մեկ ամիս գյուղում», 1986, «Տիեզերք», 1980–90, ևն), ջրաներկ նկարաշարերի (2000–04 ևն):

Դուստրը՝ **Զարուհի Մ.** (ծ. 1973), գեղանկարիչ («Հորս դիմանկարը», 1997, «Ծաղիկներով նատյուրմորտ», 2004, «Բանավեճ I», 2006, ևն):

ՄԱՆՈՒԿՅԱՆ-ՍԻՄՈՆ Լուիզ Ալեքի (ծ. 1933), հաս. գործիչ, բարերարուհի: Ալեք *Մանուկյանի* դուստրը: 1987-ից՝ ՀԲԸՄ գործադիր փոխնախագահ, 1989–2004-ին՝ նախագահ: Մ-Ս-ի՝ նախաձեռնությամբ 1992-ին հիմնադրվել է *«Էյ Ջի Բի Յու Նյուզ»* ամսագիրը:

ՄԱՆՈՒՅԼՈՎ Վիկտոր Անդրոնիկովիչ (1903–1987), ռուս գրականագետ: «Լերմոնտովի հանրագիտարան»-ի (1981) գլխ. խմբ.: Հեղինակ է XIX դ-ի ռուս. գրկ-յանը (հիմնականում՝ Մ. Յ. Լերմոնտովին) վերաբերող աշխ-ների, նաև «Տարբեր տարիների բանաստեղծություններ. 1921–1983» (1984) ժող-ի:

ՄԱՆՈՒՇԱԿ (Viola), մանուշակազգիների ընտանիքի բազմամյա (հազվադեպ՝ միամյա) խոտաբույսերի և կիսաթփերի ցեղ: Հայտնի է մոտ 500 տեսակ, ՀՀ-ում՝ 14 (անուշահոտ, կովկաս., դաշտ., ժայռային ևն)՝ գրեթե բոլոր մարզերում: Ծաղկում է գարնանը և ամռան սկզբին: Որոշ տեսակներ դեղաբույսեր են. պատրաստուկներն օգտագործում են որպես խորխաբեր և մաշկ. հիվանդությունների ժամանակ: Կովկաս. և սոմխեթ. Մ-ները բնաշխարհիկ են. գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

ՄԱՆՈՒՇՅԱՆ Միսաք Գևորգի (1906–1944), բանաստեղծ: Դիմադրության շարժման գործիչ: «Ձանք» գր-գեղ. հանդեսի հրտ. (1930–31-ին, Փարիզ, Գեղամ *Աթմաջյանի* հետ): 1935–37-ին՝ *«Ձանգու»* շաբաթաթերթի հիմնադիր-խմբ.: Հեղինակ է «Բանաստեղծություններ» (ֆրանս., 1946, հայ.՝ «Իմ երգը», 1955) ժող-ի:

Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» շքանշան (հետմահու):

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ Ալեքսանդր Արամի (1929–2001), հնագետ, վիմագրագետ, ճարտ-յան պատմաբան, արվեստաբան: Արվեստագիտ. դ-ր (2002): Հեղինակ է «Քննություն Հայաստանի IV–XI դարերի շինարարական վկայագրերի» (1977), «Համաշխարհային կերպարվեստի պատմություն» (հ. 1), «Կերպարվեստը նախնադարում» (1999) և այլ աշխ-ների, գեղանկարչ. գործերի («Փշալարերով շրջափակված ծառեր», «Կալանավորները» ևն), ճեպանկարների:

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ Ալեքսանդր Բագրատի (1908–1979), անասնաբույծ-ընտրասերումնաբան: Գողտ. գիտ. դ-ր (1958), պրոֆ. (1963): Աշխ-ները վերաբերում են տեղ. տավարի, շվիցի ու զեբուի խառնածինների նպատակադիր ընտրության և զույգընտրության, «ինքն իր մեջ» բուծումից ստացված սերնդի մսատվության, կաթնատվության և կաթի բարձրյուղայնության համատեղման խնդիրներին:

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ Գագիկ Գևորգի (ծ. 1941), նյարդաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1996): Աշխ-ները վերաբերում են նյարդաանատոմիային, նյարդաքիմիային, բնական և ձևափոխված ֆիզ. գործոնների բուժիչ ազդեցության մեխանիզմներին, ծայրամաս. նյարդ. համակարգի մի շարք հիվանդությունների բուժման նոր եղանակների մշակման հարցերին: Հունգարիայի «Գեդեոն Ռիխտեր» դեղագործ. ֆիրմայի ոսկե մեդալ (2000):

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ Լևոն Նիկոլայի (1890–1974), գեոդեզիստ: Տեխ. գիտ. դ-ր (1961), պրոֆ. (1939): ՀԽՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1960): Ղեկավարել է հանրապետության տարածքի տեղագր. հանույթի կազմման աշխ-ները:

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ Հենզել Գերասիմի (ծ.1944), փիլ., ազգագրագետ: Փիլ. գիտ. դ-ր (1993), պրոֆ. (2006): Աշխ-ները վերաբերում են քաղ. մտքի պատմության, հայագիտ-յան հիմնախնդիրներին, անդրադարձել է Մեծ եղեռնի քաղ. դրդապատճառներին: ԵՊՀ ոսկե մեդալ (2014):

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ Մարտուն Արշակի (1925–1990), գյուղատնտես: Կենսբ. գիտ. դ-ր (1984), պրոֆ. (1989): Աշխ-ները վերաբերում են խոդդենու մշակության տեխնոլոգիայի կատարելագործման և բերքատվության բարձրացման հարցերին:

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ Նինա Նիկողայոսի (1885–1972), դերասանուհի: ՀԽՍՀ ժող. արտիստ (1949): 1909-ից Թիֆլիսում խաղացել է Ամո Խարազյանի և Հովհաննես Զարիֆյանի թատերախմբերում: 1929–57-ին՝ ԵՊՀԹ հիմնադիր-դերասանուհիներից (Սալոմե, Քալի՝ Գ. Սունդուկյանի «Էլի մեկ զոհ», «Քանդած օջախ», Պրոստակովա՝ Դ. Ի. Ֆոնվիզինի «Տհասը», ևն): Նկարահանվել է կինոյում («Նամուս», 1925, «Զարե», 1926, «Չար ոգի», 1927, «Պեպո», 1935, բոլորը՝ Հայֆիլմ):

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ Ռուբեն Ստեփանի (ծ. 1930), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ-ր (1975), պրոֆ. (1976): Հեղինակ է «Բառակազմական կարգերի զուգորդման մի քանի հարցեր» (1974), «Բառակազմական նշանակություններն ու ձևերը ռուսերենում և հայերենում» (ռուս., 1981) աշխ-ների, համահեղ.՝ «Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարան»-ի (1975):

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆՑ Գրիգոր (1773–1846), ազգ-ազատագր. շարժման գործիչ, արք.: 1804–13-ի ռուս-պարսկ. պատերազմի ժամանակ Ղազախի և Շամշադինի հայերից կազմել է հեծյալ ջոկատ (500 մարդ) և մասնակցել ռազմ. գործողությունների: Աչքի է ընկել ռուս. զորքերի Երևանյան արշավանքներում (1804, 1808, 1827), Նախիջևանի գրավման (1808-ի նոյեմբ.) ժամանակ: 1826–28-ի ռուս-պարսկ. պատերազմում ապահովել է հայ բնակչության (Լոռի-Փամբակ, Դիլիջան, Ղազախ-Շամշադին) անվտանգությունը, ռուս. բանակի մատակարարումը: Պատերազմից հետո վերաշինել է Նոր Վարագավանքը, բացել ծխական դպրոց:

ՄԱՆՈՒՉԱՐՈՎ Անդրեյ Արսենի (1917–2001), ավիացիայի գեն-մայոր (1967): 1-ին կարգի (1963), ԽՍՀՄ վաստ. (1975) փորձարկող օդաչու: Մասնակցել է ՀՄՊ-ին, այնուհետև՝ 103 տարբեր տիպի՝ Յակ-9, ՄիԳ-9, Յակ-15, Լա-11, Սու-11, Տու-22Մ և այլ ինքնաթիռների փորձարկումներին: Հեղինակ է մանևրային ինքնաթիռների գործն. աերոդինամիկայի մասին մենագրության:

Լենինյան (1967), ԽՍՀՄ Պետ. (1975) մրց-ներ, Լենինի, ՀՄՊ 1-ին աստիճանի (2), Կարմիր դրոշի, Կարմիր աստղի (4) շքանշաններ:

«ՄԱՆՈՒՉԵՒ ՄԱՏԵԱՆ», X–XI դդ-ի ճարտ. հուշարձան Անի ք-ի հվ-ում՝ Ախուրյան գետի ձորեզերքին: Կառուցվել է *Բագրատունիների* օրոք՝ որպես մաքսատուն կամ պահակատուն: Շադդադյանները 1072-ին շենքի հին աշտարակի տեղում կառուցել են ութանիստ, ներսից պտուտակաձև աստիճաններով մինարե և, նորոգելով շենքի վերնահարկը, հարմարեցրել մզկիթի:

ՄԱՆՈՒՅԻ (լատ.՝ Manutius, իտալ.՝ Manuzio) Ալդ Մեծ (մոտ 1450–1515), վենետիկցի տպագրիչ, հրտ., գիտնական: 1494-ին հիմնադրել է տպարան (գործել է շուրջ 100 տարի), սկզբում տպագրել է անտիկ հեղինակների գործեր, 1500-ից՝ ժողովրդախոսակց. լեզվով գրքեր: Մ-ի և նրա հետնորդների հրատարակած գրքերը կոչվել են «Ալդինատիպ»:

ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱ (< լատ. manus – ձեռք և factura – պատրաստում), աշխ-ի բաժանման ու ձեռքի արհեստագործ. տեխնիկայի վրա հիմնված ձևեռն.՝ առավելապես XVI–XIX դդ-ում: Նպաստել է աշխ-ի հաս. բաժանման խորացմանը, նախապատրաստել անցումը մեք. արտադր-յանը:

ՄԱԾ, բակլազգիների ընտանիքի միամյա բույս: Լորու տեսակ է (ձավար, կանաչ ունդ), կեր. (կանաչ զանգված, խոտ, սիլոս, ծղոտ) և սիդերալ (կանաչ պարարտացման) մշակարույս է՝ հիմնականում Ասիայի երկրներում:

ՄԱՇԱԴՈՒ ԴԵ ԱՍԻՍ (Machado de Assis) Ժոակին Մարիա (1839–1908), բրազիլացի գրող: Քննադատ. ռեալիզմի հիմնադիրը բրազիլ. գրկ-յան մեջ: Հեղինակ է «Գրառումներ անդրաշխարհից» (1881), «Կինկաս Բորբա» (1891), «Դոն Կասմուռու» (1899) սոցիալ-հոգեբ. վեպերի, նաև պատմվածքների, բանաստեղծությունների:

ՄԱՇԲԱՇ Իսհակ Շումաֆի (ծ. 1931), ադրբեջացի գրող: Ադրբեջայի ժող. գրող (1993): Հեղինակ է «Ադրբացողներին չեն սպասում» (1966), «101-րդ լեռնանցքը» (1972), «Հեռավոր ամպրոպի որոտները» (առանձին հրտ.՝ 1982), «Երկու գերի» (երկխոսություն, 1995), «Խան-Գիրեյ» (1998) վեպերի, նաև բանաստեղծությունների ու պոեմների (այդ թվում՝ «Կեսօրվա շոայլ արևը», 1979):

ՌԽՖՍՀ Մ. Գորկու անվ. (1981), ԽՄՀՄ (1991) Պետ. մրց-ներ:

ՄԱՇԵՐՈՎ Պյոտր Միրոնովիչ (1918–1980), բելոռուս պետ. և կուս. գործիչ: ԽՄ հերոս (1944): Սոց. աշխ. հերոս (1978): ՀՄՊ-ի ժամանակ՝ պարտիզան. ջոկատի հրամ. (1941–44), բրիգադի կոմիսար: 1947–54-ին՝ Բելոռուսիայի ԼԿԵՄ ԿԿ, 1965-ից՝ կոմկուսի 1-ին քարտուղար: 1966-ից՝ ԽՄԿԿ ԿԿ քաղբյուրոյի անդամության թեկնածու: Զոհվել է ավտովթարից:

ՄԱՇԻՆՅԱՆ Ադամ Ղազարի (1922–2006), նկարիչ, գրաֆիկ: Հեղինակ է գրաֆիկ. («Աբովյանը երեխաների հետ», 1957, «Շահումյանի հանդիպումը Լենինի հետ», 1976, «Ծերունու դիմանկարը», 1985, ևն), գեղանկարչ. («Վրիմ՝ Շայապինի ժայռերը», 1996, «Ալեկոծում», 2004, ևն) գործերի, նաև գրքերի նկարազարդումների:

ՄԱՇԿ, մարդու և կենդանիների մարմնի արտաքին ծածկույթը, որը կատարում է շոշափող., զգացողության, նյութափոխանակության, ջերմակարգավորման, միջավայրի վնասակար ազդեցությունների դեմ պաշտպ. գործառույթներ: Հասուն մարդու մաշկի մակերեսը 1,5–2 $մ^2$ է: Մ-ի հավելումներն են եղունգները, մազերը, մազիլները, փետուրները:

ՄԱՇԿԱԹԱԹԵՐ (անատոմ.), թիանման վերջույթներ, որոնք կատարում են շարժողության օրգանների խորությունը ղեկավարելու, ողնաշարավոր կենդանիների (ծով. կրիաներ, պինգվիններ, փոկեր, ծովափղեր, կետեր) ջր. կենսակերպի անցնելու ֆունկցիաներ:

ՄԱՇԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, մարդու և կենդանիների հիվանդությունների խումբ, որոնք արտահայտվում են մաշկի, դրա հավելումների (եղունգներ, մազեր) և տեսանելի լորձաթաղանթների ախտաբան. փոփոխություններով: Առաջացման պատճառները կարող են լինել արտաքին՝ պայմանավորված մեխ. (վնասվածքներ, ճնշում, քերծվածքներ), ֆիզ. (արևային և ռադիոակտիվ ճառագայթներ, բարձր ու ցածր ջերմաստիճաններ), քիմ. (թթուներ, հիմքեր, պոլիմերներ ևն), կենսբ. (բույսերի հյութեր, միջատներ, մանրէներ) գործոնների ազդեցությամբ, ներքինն առաջանում է վարակիչ հիվանդությունների, թունավորումների, ներքին օրգանների ու ներզատիչ գեղձերի հիվանդությունների, նյութափոխանակության և արյան շրջանառության խանգարումների հետևանքով: Առանձին խումբ են կազմում մաշկի ալերգ. հիվանդությունները:

ՄԱՇԿԵՂԱԿԵՐՊ ՓՈՔՐԱՉՂՋԻԿ [Pipistrellus (v.) savir], հարթաքիթ չղջիկների ընտանիքի կաթնասուն կենդանի: ՀՀ-ում հանդիպում է ամենուրեք: Մարմնի երկ.՝ 42–56, պոչինը՝ 31–45, նախաբազկինը՝ 31–40 *մմ*: Ապրում է շին-յուններում, փլատակներում, ոչ խորը այրերում, ժայռածեղբերում: Մնվում է մանր ու միջին չափերի միջատներով:

ՄԱՇԿԵՎԱՆԻ ՎԱՆՔ, Մաշկավոր, կրոն., գիտ., գրչության կենտրոն Կիլիկյան Հայաստանի Ճկեր գվթ-ում՝ Սև լ-ներում: Կառուցել է *Թորոս Ա* Ռուբինյան իշխանը (XII դ–ի սկիզբ): 1130-ին Մ. վ-ում ավարտվել է մի Ճառընտիր, որի գրիչը հավանաբար Գրիգոր Մաշկևորն է (այստեղից՝ վանքի անվանումը): Մ. վ-ում են գործել Դավիթ վանահայրը (XII դ.), Կիրակոսը, Առաքել Հազանդենցը (կազմարար), Բարսեղ արք-ը (3-ն էլ՝ XIII դ.), Հովհաննեսը, Ներսես քին-ն (XIV դ.) և ուր.: Պահպանվել են Մ. վ-ում գրված Ավետարան (1187), Ճաշոց (1192), XIII դ–ի՝ 5 և XIV դ–ի 3 ձեռագրեր, որոնք պահվում են Մտնդ-ում, Վենետիկում, Նոր Ջուղայում:

ՄԱՇԿՈՎ Վլադիմիր Լվովիչ (ծ. 1963), ռուս դերասան, ռեժ.: ՌԴ ժող. արտիստ (2010): Նկարահանվել է «Սըր, Այասկան է», «Մերձմոսկովյան երեկոներ», «Ամերիկացի դուստրը», «Գողը», «Օլիգարխ», «Ապուշ», «Լիկվիդացիա» (վերջին 2-ը հեռուստասերիալ) և այլ ֆիլմերում: Նկարահանել է «Կազանի որբը» (1997), «Հայրիկ» (2004) կինոնկարները, բեմադրել Բ. Բրեխտի և Կ. Վայլի «Երեքգրոշանոց օպերա» (1997), Ռ. Կունիի «№ 13» (2001) գործերը: Աշխատում է նաև Հոլիվուդում:

ՄԱՇԿՈՏԱՆԻՆԵՐ, ջր. կաթնասունների կարգ: Վերջույթները վերափոխվել են մաշկաթաթերի: Հայտնի է 3 ընտանիք՝ ծովափղեր (1 տեսակ), ականջավոր և իսկական փոկեր: 31 տեսակ տարածված է լայնորեն, առավելապես՝ բոլոր օվկ-ների սառը և բարեխառն ջրերում: Արդյունագործ. օբյեկտ է (միսը, կաշին, ճարպը), որսն ամենուրեք սահմանափակ է:

ՄԱՇՈՆԱՆԵՐ, շոնաներ, ժողդ Զիմբաբվեում (8,5 մլն, 2010): Ապրում են նաև Մոզամբիկում (460 հզ.), ՀԱՀ-ում (340 հզ.), Մալավիում (75 հզ.), Բոտսվանայում (50 հզ.), Զամբիայում (40 հզ.): Լեզուն՝ շոնա: Հավատացյալները հիմնականում քրիստոնյա են, կան նաև ավանդ. հավատալիքների հետևորդներ:

ՄԱՇՏՈՑ, ծիսարան, ՀԱԵ ծիս. ժող., պարունակում է քրիստ. ծիսակարգի կանոններ, նաև հատուկ աղոթքներ, օրհնություններ: Անվանումը կապվում է *Մեսրոպ Մաշտոցի*, իսկ ըստ պատմիչ *Կիրակոս Գանձակեցու* (XIII դ.)՝ *Մաշտոց Ա. Եղիվարդեցի* կաթողիկոսի անվան հետ, որն ավելի հավանական է: Ձևավորվել է IV–V դդ–ից: Բաժանվում է 3 մասի՝ Փոքր Մ. (բովանդակում է քին-ի խորհուրդներն ու արարողությունները՝ մկրտություն, դրոշմ, մեռելաթաղ, սովոր. օրհնություններ), Մայր Մ. (պարունակում է եպիսկոպոս. արարողություններ՝ ձեռնադրություն, գավազանի ընծայություն, եկեղեցու օծում, քահանայաթաղ, մեծ օրհնություններ), Հայր Մ. (կաթողիկոսին պատկանող արարողություններ՝ թագավորի, կաթողիկոսի օծում, եպս-ի ձեռնադրություն, մյուռոնօրհնեք ևն): Մ. ի սկզբանե նախատեսված է եղել նաև արտաեկեղեց. կենցաղավարման համար, այդ իսկ պատճառով հարուստ է ժող. ծիս. և բանահյուս. տարրերով, երաժշտ. բաղադրիչներով: Հայտնի են ձեռագիր մի շարք բարձրարվ. Մ-ներ. պահվում են Երևանի (ձեռ. № 1001), Վենետիկի (ձեռ. № 457), Երուսաղեմի (ձեռ. № 2027) և այլ մտնդ-ներում: Առաջին տպագիր Մ. լույս է ընծայել *Հրգայր Թոխաթեցին* 1569-ին Կ. Պոլսում:

«ՄԱՇՏՈՑ», մագաղաթե պատկերազարդ ձեռագիր [գրիչ՝ Ավետիք քհն. (Սիս), ծաղկող՝ *Թորոս Ռոսլին* (Հռոմկլա), պատվիրատու՝ Վարդան եպս., 1266, Երուսաղեմի մտնդ., ձեռ. № 2027]: Պատկերագր. նորարարության և կատարման բարձր վարպետության շնորհիվ «Մ.» դասվում է միջնադար. գրքարվ-ի լավագույն հուշարձանների շարքը:

«ՄԱՇՏՈՑ», ազգ., պատմ., մշակութ. պարբերաթերթ (1993–2003, Կրասնոդար): Մեսրոպ Մաշտոցի անվ. հայկ. մշակույթի ընկ-յան հրտ-յուն: Գլխ. խմբ.՝ Տիգրան Թավադյան:

«ՄԱՇՏՈՑ», հաս., կրթամշակութ., հայագիտ. հանդես (1997-ից, Վանաձոր): Լոռու մարզի «Մաշտոց» կրթամշակութ. կենտրոնի հրտ-յուն: Հիմնադիր-խմբ.՝ Գագիկ Աթաբեկյան:

ՄԱՇՏՈՑ Ա ԵՂՎԱՐԴԵՑԻ, Սևանցի (833–898), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 897-ից: 871-ին Սյունյաց Մարիամ իշխանուհու միջոցներով Սևանա կղզում կառուցել է տվել Սբ Առաքելոց և Սբ Աստվածածին եկեղեցիները: Հիմնադրել է Սբ Առաքելոց վանքի միաբանությունը, Սևանա վանքում՝ վարժարան, որն ունեցել է նաև վարդապետ. աստիճան շնորհելու իրավունք: Մեզ են հասել Մ. Ա Ե-ու հեղինակած 2 թուղթ՝ ուղղված սպարապետ Աբաս Բագրատունուն և 893-ի երկրաշարժից տուժածներին:

ՄԱՇՈՒՐՅԱՆ Սերգեյ Մանուչարի (1910–1941), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. թեկնածու (1938), պրոֆ. (1940): Աշխ-ները վերաբերում են ոչ գծային պարաբոլ. նախագծերի տեսությանը:

ՄԱՈ ԴՈՒՆ (Շեն Յան Բին, 1896–1981), չին գրող: Հեղինակ է «Խավարում» (1927–28) սոցիալ-հոգեբ. եռերգության, «Մասրենի», «Անցած տարվա խոտը» (երկուսն էլ՝ 1929) պատմվածքների ժող-ների, «Լուսաբացից առաջ» (1933, հայ.՝ 1957) դյուցազներգության, «Քայքայում» (1941), «Տերևները՝ եղյամով շղարշված, կարմրին են տալիս, ինչպես ծաղիկները գարնանը» (1942) վեպերի, գրաքննադատ. և այլ գործերի:

ՄԱՈ ՅԱԶԵ ԴՈՒՆ (1893–1976), Չինաստանի կոմկուսի (ՉԿԿ) նախագահը՝ 1943-ից: ՉԿԿ հիմնադիրներից: 1954–59-ին՝ ՉԺՀ նախագահ: 1933-ից՝ ՉԿԿ ԿԿ քաղբյուրոյի անդամ: Նախաձեռնել է (1966–76) «մեծ թռիչք»-ի քաղ-յունը, «մշակութային հեղափոխությունը» (1966–67), ստեղծել է «ժողովրդական կոմունաներ»: Մ. Յ. Դ-ի «գաղափարները» ՉԿԿ ղեկ-ները բնորոշել են որպես «Չինաստանում մարքսիզմ-լենինիզմի գործնական կիրառում և զարգացում»:

ՄԱՈՐԻ ԼԵԶՈՒ, Նոր Զելանդիայի պետ. լեզուներից (անգլ-ի և նորզելանդ-ի հետ): Պատկանում է ավստրոնեզ. լեզվաընտ-

տանիքի պոլիներեզյան ենթախմբին: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՄԱՌՐԻՆԵՐ, պոլինեզ. ժողդ, Նոր Զելանդիայի արմատ. բնակչությունը (565,3 հզ., 78,6 հզ–ը՝ մաորիական ծագման, 2006): Ապրում են նաև Ավստրալիայում (73 հզ., 2001): Խոսում են ***մաորի լեզվով***: Հավատացյալները քրիստոնյա են (անգլիկաններ, կաթոլիկներ, ավետարանականներ), կան նաև ավանդ. հավատալիքների հետևորդներ:

ՄԱՉԱԴՈ Ի ՌՈՒԻՍ (Machado y Ruiz) Անտոնիո (1875–1939), իսպանացի բանաստեղծ: Հեղինակ է «Անձկություն» (1903), «Կաստիլիայի դաշտերը» (1912), «Նոր երգեր» (1924), «Պատերազմ» (1937) և այլ բանաստեղծությունների ժող–ների, համահեղ.՝ մի քանի չափածո պիեսների:

«ՄԱՊ», ընկ. ՀՀ Արմավիրի մարզի Լենուղի գ–ում: Հիմնադրվել է 1995–ին՝ Հոկտեմբերյանի գինու–կոնյակի գործարանի (հիմն.՝ 1942) հիմքի վրա: Արտադրում է ոգելից խմիչք (գինի, կոնյակ), տոմատի մածուկ և պահածոներ: Տնօրեն՝ Մակար Պետրոսյան:

ՄԱՊՈՒՏՈՒ (Maputo, մինչև 1976–ը՝ Լորենսու Մարկիշ), ***Մոզամբիկի*** մայրաքաղաքը, նվինգստ Հնդ. օվկ–ի ափին: Բն.՝ 1,1 մլն (2010): Ունի օդանավակայան: Կան մետաղամշակման, տեքստիլ, սննդի արդ–յան և այլ ձեռն–ներ: Հիմնադրվել է 1850–ին:

ՄԱՋՈՒՐՈ (Majuro), Մարշալյան կղզիների մայրաքաղաքը համանուն բուստ. կղզում: Բն.՝ 25,8 հզ. (2010): Գործարար կենտրոն է: Զարգացած է զբոսաշրջությունը: Կան հուշանվերների արդ–յան ձեռն–ներ:

ՄԱՆ Նիկողայոս Յակովլևիչ (1864–1934), արևելագետ, լեզվաբան, հնագետ, հայագետ: Ս. Պետերբուրգի (1909), Ռուսաստանի (1917), ԽՍՀՄ (1925) ԳԱ–նե–րի ակադ.: Աշխ–ները վերաբերում են կովկասյան լեզուներին, պատմությանը, հնագիտ–յանը, Կովկասի ազգագրությանը: 1893–1917–ին զբաղվել է (ընդմիջումներով) ***Անիի*** պեղումներով, լույս ընծայել «Անի» (ռուս., 1934) աշխ–ը:

ՄԱՌ–ԱԽՈՒՂ, օդի երկրամերձ շերտում ջրի մանր կաթիլների կամ սառցաբյուրեղիկների կուտակում, որը նվազեցնում է հորիզոն. տեսանելիությունը մինչև 1 *կմ*: Տարվա ընթացքում ՀՀ–ում Մ–ով օրերի թիվն աոլգն–ը (150–200) դիտվում է Արագածի, Գեղամա, Զանգեզուրի լեռն. շրջաններում (50–70 %–ը՝ հոկտ–մարտին), նախալեռն. շրջաններում՝ 25, Գյումրիում՝ 54, Գորիսում՝ 68, Մեղրիում՝ 108, ևն: ՀՀ տարածքում Մ–ների 50–70 %–ը դիտվում է 00 *ժ*–ից մինչև 10–ը: Նոյեմբ–մարտին Երևանի շրջակայքում 40–50 օր մառախլապատ է: Մեծ քաղաքներում կարող է առաջացնել նաև ***մշուշ***:

ՄԱՌԻԻ ՁԱԿԱՏԱՄԱՐՏ 1266, Եգիպտոսի արաբ. սուլթանության և Կիլիկիայի հայկ. թագավորության զորքերի միջև (օգոստ. 23)՝ Սև լ–ների Մառի կոչվող կապանում: Սուլթան Բեյբարսը 30–հզ–անոց զորքով ներխուժել է Կիլիկիա: Գերակշռող ուժերի (սուլթանին էր միացել նաև Հալեպի ամիրության 15–հզ–անոց զորքը) ճնշմամբ հայկ. զորքերը նահանջել են: Մարտում զոհվել է նաև հրամ. Թորոսը՝ ***Հեթում Ա***–ի որդին: Թշնամին ներխուժել է երկիր, գրավել ու կողոպտել Սիսն ու այլ ք–ներ, գերեվարել շուրջ 40 հզ. բնակչի: Հեթում Ա–ն, սուլթանությանը որոշ բերդերի զիջման գնով, ազատել է գերված գահաժառանգ Լևոնին (ապագա ***Լևոն Գ***):

ՄԱՌԼԻՆՆԵՐ (Makaira), պերկեսակերպների կարգի ձկների սեռ: Երկ. երբեմն 5 *մ*–ից ավելի է, կ. զ.՝ մինչև 900 *կգ*: Հայտնի է 3 տեսակ՝ բոլոր օվկ–ների արևադարձ. և մերձարևադարձ. բաց ջրերում: Արդյունագործ. և մարզ. ձկնորսության ձուկ է:

ՄԱՌԼՈ (Marlowe) Քրիստոֆեր (1564–1593), անգլիացի դրամատուրգ: Լանկ Թամուրի մասին «Մեծ Թամերլան» (1587–88, հրտ.՝ 1590), «Դոկտոր Ֆաուստի ողբերգական պատմությունը» (հրտ.՝ 1604, հայ.՝ 1985) ողբերգություններում պատկերել է անհատի ազատագրումը միջնադար. ճգնավորական բարոյականությունից: Հեղինակ է նաև «Մալթացի հրեան» (մոտ 1588, հրտ.՝ 1633) ողբերգության, «Էդուարդ II» (հրտ.՝ 1594) պատմ. ժամանակագրության և այլ գործերի:

ՄԱՌ–Ք Հայկանուշ Մարզարի (1883–1966), գրող, հաս. գործիչ, խմբ.: 1905–07–ին Կ. Պոլսում խմբագրել և հրատարակել է «Ծաղիկ կանանց յատուկ», 1907–08–ին (ամուսնու՝ Վահան ***Թոշիկյանի*** հետ)՝ «Արշալոյս», 1907–ին՝ «Լոյս կանանց յատուկ», 1919–32–ին՝ «Հայ կին» հանդեսները: Հեղինակ է «Ծուլութեան պահերէս» (1921) արձակ բանաստեղծությունների ժող–ի:

ՄԱՍ ԵՎ ԱՄԲՈՂՋ, փիլ. կատեգորիաներ, որոնք արտահայտում են առարկաների համախմբության և օբյեկտիվ կապի հարաբերությունը, որը միավորում է դրանք և հանգեցնում նոր հատկությունների ու օրինաչափությունների դրսևորման: Այդ կապը հանդես է գալիս իբրև ամբողջ, իսկ առարկաները՝ որպես մասեր: Ամբողջի հատկությունները տարբեր են նրա մասերի հատկություններից:

ՄԱՍԱԼԻՏԻՆՈՎԱ Վարվառա Օսիպովնա (1878–1945), ռուս. թատրոնի և կինոյի դերասանուհի: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1933): 1901–ից՝ Մոսկվայի Փոքր թատրոնի դերասանուհի: Խաղացել է հիմնականում կենցաղ–ընութագր. դերեր Ա. Ն. Օստրովսկու, Ն. Վ. Գոգոլի, Ա. Վ. Սուխովո–Կոբիլինի և ուր. պիեսներում: Նկարահանվել է կինոյում («Ամպրոպ», «Գորկու մանկությունը», «Ներխուժում», «Մարդկանց մեջ»):

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941):

ՄԱՍԱՆՈՎ Իվան Ֆիլիպովիչ (1874–1945), ռուս մատենագետ: Հեղինակ է «Ռուս գրողների, գիտնականների և հաս. գործիչների ծանկանունների բառարանի» (հ. 1–4, 1956–60):

ՄԱՍԱՈ ԻՏՈ (ծ. 1928), ճապոնացի նյարդաֆիզիոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (1959), պրոֆ. (1970): Ճապոնիայի (1989), Շվեդիայի թագավոր. (1989), Ռուսաստանի (1994), Ֆրանսիայի (1998) ԳԱ–ների, ՀՀ ԳԱԱ արտ. (1990) անդամ: Ուղեղի գիտ. ինստ–ի (1997–2003) տնօրեն, հետազոտության միջազգ. կազմ–յան պատվ. նախագահ (1986–ից), Ասիայի և Օվկիանիայի ֆիզիոլոգ. միությունների դաշնության (1990–ից) և մի շարք ֆիզիոլոգ. միությունների նախագահ:

Ճապոնիայի ԳԱ (1986), Պետ. (1986, 1996), միջազգ. «Գրուբեր» (2006) մրց–ներ:

«ՄԱՄԵՆՅ ԱՂԱՒՆԻ», ազգ., գիտ., գր., կրթ. հանդես (1855–58, Փարիզ, 1860–65, Թեոդոսիա): Խմբ–հրտ.՝ Գաբրիել Այվազովսկի: Տես նաև ***«Մասյաց աղավնի»***:

ՄԱՄԵՀՅԱՆ (Խան Մասեհյան) Հովհաննես Ծերունի (1864–1931), պետ., հաս. գործիչ, թարգմանիչ, մանկավարժ, խմբ.: 1884–ից՝ շահի պալատ. թարգմանիչը, միաժամանակ դասավանդել է Թեհրանի Հայկազյան դպրոցում (1888–96–ին՝ տնօրեն): 1894–ին հիմնադրել և խմբագրել է իրանահայ 1–ին պարբ–ը՝ ***«Շաւիղ»***–ը: 1901–ին՝ Բեռլինում Պարսկաստանի դեսպանի խորհրդական, 1905–ին՝ գործերի հավատարմատար, 1912–ին՝ Պարսկաստանի դեսպան Գերմանիայում, 1927–ին՝ Անգլիայում, 1930–ին՝ Ճապոնիայում: 1916–ից եղել է ***Պողոս Նուբարի*** գլխավորած Ազգ. պատվիրակության կազմում: Հայ իրականության մեջ Մ. հայտնի է որպես Վ. Շեքսպիրի երկերի ամենահայտնի թարգմանիչը, թարգմանել է նաև Օմար Խայամի, Սաադիի, Զ. Բայրոնի, Յ. Վ. Գյոթեի, Ռ. Թագորի և ուր. գործերից:

ՄԱՄԵՐՈՒ (Maseru), Լեսոթոյի մայրաքաղաքը: Բն.՝ 254 հզ. (2010): Ավտոճանապարհ. հանգույց է: Ունի օդանավակայան: Գեղտ. շրջանի կենտրոն է: Գործում է Ազգ. թանգարանը: Հիմնադրվել է 1869–ին:

ՄԱՄԻԿՅԱՆ Պարույր Զաքարիայի (1914–1989), գրող, երաժիշտ: Հեղինակ է «Մեր կեանքը» (1946), «Կոտրած խաչեր» (1959), «Տեղատարափ» (1962) պատմվածքների ու կատակերգությունների ժող–ների: Մ–ի «Խաչը», «Թոռնիկս», «Միլիոնը», «Աղջիկտես» պիեսները և «Էրզրումի կլոր պարը» օպերետը բեմադրվել են Սփյուռքի բեմերում:

ՄԱՄԻՆՆ Բորիս Գրիգորևիչ (1889–1956), հելմինթոլոգ: Կ. Ի. ***Սկրյաբինի*** աշակերտը: Պրոֆ. (1928): ԵԱԱԻ–ի հիմնադիրներից (1928–38–ին՝ տնօրեն), 1938–ից՝ Լենինգրադի անասնաբույժների կատարելագործման ինստ–ի տնօրեն: Աշխ–ները վերաբերում են մակաբուծ. հիվանդությունների (հատկապես՝ ՀՀ–ում տարածված) պատճառագիտ–յանը, բուժմանը և կանխարգելմանը:

ՄԱՄԻՍ Մեծ և Փոքր, Հայկ. լ–աշխարհի ամենաբարձր գագաթը (5165 *մ*): Հանգած հրաբուխ՝ Հայաստանի, Իրանի և Թուրքիայի սահմանին՝ Արաքս գետի աջ ափին: Մ–ի հիմքի մակերեսը 12 *կմ*² է. հարաբեր. բարձր–յամբ (ստորոտից գագաթ)՝ 4300 *մ*, առաջինը՝ աշխարհում: Հս. լանջին է «Մասեաց վիհը», որը ստորոտից գագաթի շուրջ ձգվում է 10 *կմ* երկ–յամբ, աոլգն խոր. գագաթի մոտ՝ 1000 *մ*: Գագաթը պատված է հավերժ. ձյունով: Մ. հայոց կարևոր խորհրդանիշներից է. հիմարվում է սուրբ լեռ: Ըստ Աստվածաշնչի Ծննդոց գրքի՝ Նոյյան տապանը նստել է «Արարատի լեռների» վրա, որով այն աղերսվում է Համաշխ. ջրհեղեղի հետ: Ըստ Մովսես Խորենացու՝ «Մասիս» անունը կապված է Ամասիա արքայի անվան հետ, իսկ «Արարատ» անվանումը Ուրարտու–Արարատ անվան տարբերակ է:

Մ. լեռ առաջին հաջող վերելքը տեղի է ունեցել 1829–ին՝ Դորպատի համալսարանի պրոֆ. Ֆ. ***Պարրոտի*** գլխավորությամբ, որին ուղեկցել են Խաչատուր ***Աբովյանը*** և երկուական շինական ու զինվոր: Հետո Մեծ Մ. կոչել են Ազատ Մ., Փոքր Մ. (3925 *մ*)՝ Սիս:

ՄԱՄԻՍ, ք. (1995–ից) ՀՀ Արարատի մարզում՝ Հրազդանի ափին: Երևանը սպասարկող խոշոր երկթղ. հանգույց է: Բն.՝ 20,4 հզ. (2014): Մ–ում գործում են «Մասիս Տաբակ», «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ծխախոտի, «Ալիշան ՍՊԸ» պահածոների, «Մասիս Գոֆրոտարա» ստվարաթղթե արկղերի, «Գրաֆ–Ռոր ՓԲԸ» հացահատիկի և այլ արտադր. ձեռն–ներ:

«ՄԱՍԻՍ», քաղ., տնտ., գր. և բանասիր. պարբերաթերթ (1852–1908, Կ. Պոլիս): Խմբ-ներ՝ Կարապետ Ութուճյան, Արփիար Արփիարյան, Գրիգոր Զոհրապ, Հրանդ Ասատուր, Միքայել Շամտանճյան, Բյուզանդ Քելչյան, Ռեթեոս Պերպերյան, Զարեհ Յուսուֆյան, Տիգրան Արփիարյան, Ենովք Արմեն, Լևոն Բաշալյան:

«ՄԱՍԻՍ», կրոն., հաս-քաղ., գր. ամսաթերթ (1947-ից, Բեյրութ): Հայ կաթողիկե պատրիարքության հրտ-յուն: Խմբ-ներ՝ Հարություն Թեքեյան, Ռափայել Պայան, Մեսրոպ Թերզյան, Վարդան Թեքեյան, Անդրանիկ Կոռնյան:

«ՄԱՍԻՈ», գր., հաս-քաղ. շաբաթաթերթ [1980-ից, Փասադենա (ԱՄՆ)]: ՍԻՀԿ Արմ. Ամերիկայի պաշտոնաթերթ: Հիմնադիր-խմբ.՝ Հակոբ Սաղրյան:

ՄԱՍԼԱՄԱ ալ-Մաջրիթի (Մասլամա Մադրիդցի, մոտ 950–1007), իսլամ աստղագետ, քիմիկոս, մաթեմատիկոս, տնտեսագետ մահմեդ. Իսպանիայում: Մասնակցել է Պտղոմեոսի «Աստղացույցի» (Planisphaerium) թարգմ-յանը, բարելավել «Ալմագեստի» թարգմ-յունը, ճշգրտել ալ-Խորեզմիի աստղաաշխ. աղյուսակները, մշակել պարսկ. օրացույցը մահմեդ. օրացույցի (հիջրա) վերածելու աղյուսակներ ևն:

ՄԱՍԼԱՄԱ ԻԲՆ ԱԲԴՈՒԼ ՄԱԼԻՔ (685–738), VII դ-ի 1-ին կեսի արաբ զորավար: Պաշարել է Կ. Պոլիսը, եղել է Հվ. Ասորիքի կառավարիչը: Արշավել է Կովկաս, նաև Հայաստան, այն ենթարկել խալիֆությանը: Երաշխավորել է հայ նախարարների հողատիր. իրավունքները՝ հարկ վճարելու պայմանով:

ՄԱՍԼԵՆՆԻԿՈՎ Իգոր Ֆեոդորովիչ (ծ. 1931), ռուս. կինոռեժ.: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1979), ժող. արտիստ (1987): Նկարահանել է «Կուզյան Վալենտինի անձնական կյանքը» (1968, Ի. Ա. Ավերբախի հետ), «Սենտիմենտալ սիրավեպ» (1977), «Ձմեռային բալ» (1985), «Ձմեռային բալ-2» (1991), «Ռուսական փողեր» (2006), «Մանկը» (2009), «Շերլոկ Հոլմս և դոկտոր Վաթսոն» (1980–86, հեռուստասերիալ) և այլ ֆիլմեր: ՌԴ Պետ. մրց. (2001):

ՄԱՍԼԵՆՆԻԿՈՎ Իվան Իվանովիչ (1900–1954), խորհրդ. բանակի գեն. (1944): ԽՄ հերոս (1945): ՀՄՊ-ի ժամանակ ղեկավարել է մի շարք բանակներ, Հս-կովկասյան և 3-րդ Մերձբալթ. ճակատները: 1945-ին՝ Հեռավոր Արևելքում խորհրդ. զորքերի գլխ. հրամ-ի տեղակալ:

ՄԱՍԼՈՎ Անատոլի Իոսիֆովիչ (1884–1968), ռուս նավաշինարար: Տեխ. գիտ. դ-ր (1938): Խորհրդ. առաջին հածանավերի և այլ նավերի գլխ. կոնստրուկտոր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942):

ՄԱՍԼՈՎ Վիկտոր Պավլովիչ (ծ. 1930), ռուս ֆիզիկոս, մաթեմատիկոս: Տեխ. գիտ. դ-ր (1974): ՌԳԱ ակադ. (1984): Աշխ-ները վերաբերում են դիֆերենցիալ հավասարումներին, ֆունկցիաների վերլուծությանը և մաթ. ֆիզիկայում դրանց կիրառությանը:

ԽՍՀՄ (1978), ՌԴ (1997, 2013) Պետ., Լենինյան (1985) մրց-ներ:

ՄԱՍԿԱՆԻ (Mascagni) Պիետրո (1863–1945), իտալացի կոմպոզիտոր: Վերիզմի հիմնադիրներից: Հեղինակ է «Գեղջկական պատիվ» (1889), «Դիմակներ» (1901), «Լադոլետտ» («Արտույտ», 1917), «Փոքրիկ Մարատ» (1921), «Ներոն» (1935) և այլ օպերաների, «Արքան՝ Նեապոլում» (1885) օպերետի, նաև նվագախմբային, դաշնամուր. և այլ երկերի:

ՄԱՍԿԱՏ, Օմանի մայրաքաղաքը՝ Օմանի ծոցի ափին: Բն.՝ 734 հզ. (2010): Զարգացած է արհեստագործությունը: Մոտակայքում կա օդանավակայան:

ՄԱՍԿԻՆ, Մեսկին (Maskin), Էրիկ (ծ. 1950), ամերիկացի տնտեսագետ: Աշխ-ները վերաբերում են տնտեսագիտ-յան տեսության հայեցակարգին, Նեշի հավասարակշռության և օպտիմալ բարեկեցության հարցերին:

Նոբելյան մրց. (2007, Լ. *Հուրվիչի* և Ռ. *Մայերսոնի* հետ):

«ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ», հաս-քաղ., պատմաշխատութ. հանդես (1990-ից, Սիմֆերոպոլ՝ որպես Գ. Այվազովսկու *«Մասեաց աղաւնի»* ամսագրի շարունակություն): Ղրիմահայոց ընկ-յան պաշտոն. հրտ-յուն: Գլխ. խմբ.՝ Վահան Վերմիշյան:

ՄԱՍՅԱՑՈՏՆ, Ոտն Մասեաց, գվո Այրարատ նահանգ-ում՝ Մեծ և Փոքր Մասիսների հս. և արլ. ստորոտներին: Եղել է արքունի տիրույթ և հայ թագավորների որաստեղի: IX–XI դդ-ում պատկանել է Բագրատունիներին, XII–XIII դդ-ում՝ Զաքարյաններին: XVI–XIX դդ-ում մտել է Երևանի խանության Սուրմալու մահալի, 1850-ից՝ Երևանի նահանգ-ի Սուրմալու գվո-ի մեջ: ԱՀՊ-ից հետո բռնակցվել է Թուրքիային:

ՄԱՍՅՈՒՏԻՆ Վասիլի Նիկոլաևիչ (1884–1955), ռուս գրաֆիկ, գրող: 1921-ից՝ Բեռլինում: Սիմվոլիզմի ներկայացուցիչ: Հ. Բոսխի, Ֆ. Գոյայի ստեղծագործությունների ազդեցությամբ ստեղծել է մղձավանջ. և հրեշավոր պատկերներ («Յոթ մահացու մեղքեր», 1907–08, 1917–18 և 1923, «Մեղք», 1909), որոնք հազվադեպ էին ռուս. արվ-ում:

ՄԱՄՆԱԿԱՆ ՃՆՇՈՒՄ, **պարցիալ** (լատ.՝ partialis – մասնական) **ճնշում**, իդեալ. գազ. խառնուրդի որևէ բաղադրիչի այն ճնշումը, որ կունենար այդ բաղադրիչը, եթե միայն ինքը գրավեր ամբողջ խառնուրդի ծավալը:

ՄԱՄՆԱՀԱՏՈՒՄ, **ռեզեկցիա** (լատ.՝ resectio – հատում), վիրաբուժ. միջամտություն: Գործն. վիրաբուժության մեջ առավել հաճախ կատարում են ստամոքսի (քաղցկեղի, արյունահոսությամբ բարդացած խոցի, ստամոքսաելքի նեղացման ժամանակ) և բարակ ու հաստ աղիների Մ. (վնասվածք. պատռվածքների, անանցանելիության, ուռուցքների դեպքերում): Կատարվում է նաև վահանագեղձի, թոքերի, հողերի Մ.:

ՄԱՄՆԱՎՈՐ ԴՊՐՈՑ, մասնավոր անձանց և կազմ-յունների հիմնադրած կամ նրանց միջոցներով պահվող ուս. հաստատություններ՝ վճարովի հիմունքներով: XVII դ-ից հայկ. Մ. դ-ներ գործել են Արլ. և Արմ. Հայաստանում, Վրաստանում, Հս. Կովկասում, նաև Նոր Նախիջևանում, Ս. Պետերբուրգում, Աստրախանում, Ղրիմում, Բաքվում, Կ. Պոլսում, Փարիզում, Վենետիկում և այլուր: Ներկայում Մ. դ-ներ գործում են Սփյուռքի գրեթե բոլոր համայնքներում: Հետխորհրդ. շրջանում ՀՀ-ում բացվել են Մ. դ-ներ (ավելի քան 50) և մասնավոր համալսարաններ (2010-ական թթ-ին՝ շուրջ 40), որոնց թիվը վերջին տարիներին զգալիորեն կրճատվել է՝ կապված կրթ. բարեփոխումների հետ: Հայտնի են «Հայբուսակ», «Հյուսիսային», «Գլաձոր», «Մովսես Խորենացի» և այլ մասնավոր բուհեր:

ՄԱՄՆԱՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔ, իրավունքի ճյուղ. կարգավորում է ֆիզ. և իրավաբ. անձանց գույք. և այլ հարաբերություններ: Մ. ի-ին են վերաբերում քաղաքաց., ընտանեկան, առևտր. և այլ նորմեր:

ՄԱՄՆԱՎՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔ, քր. հեռապատման ձև, երբ գործը հարուցվում է բացառապես տուժողի (կամ նրա ներկայացուցչի) բողոքի հիման վրա և կարճվում է մեղադրյալի հետ հաշտվելու դեպքում: Մեղադրանքն այդ գործերով «մասնավոր» է, այսինքն՝ պաշտպանում է ինքը՝ տուժողը: Մ. մ-ի գործեր են հարուցվում ծեծի, զրպարտության, վիրավորանքի և հաս. ոչ մեծ վտանգավորության այլ հանցագործությունների դեպքերում:

ՄԱՄՆԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, սեփականության ձևերից, քաղաքացու և իրավաբ. անձի՝ բացարձակ, օրենքով պաշտպանված իրավունքը որոշակի գույքի (հող, շարժական կամ անշարժ այլ գույք) նկատմամբ: Պատմականորեն առանձին անձանց Մ. ս-յանը նախորդել է համայնք. (տոհմի, ցեղի, ընտանիքի) սեփականությունը: «Սեփականություն» և «Մ. ս.» եզրույթները ձևավորվել են հռոմ. իրավունքում (II դ.): Մարդու և քաղաքացու իրավունքների 1789-ի ֆրանս. հռչակագիրը սեփականությունը հայտարարել է սուրբ և անձեռնմխելի իրավունք:

ՄԱՄՆԵ (Massenet) Ժյուլ Էմիլ Ֆրեդերիկ (1842–1912), ֆրանսիացի կոմպոզիտոր, քնար. օպերայի վարպետ: Փարիզի կոնսերվատորիայի պրոֆ. (1878–96): Ֆրանսիայի ինստ-ի անդամ (1948): 1910-ից՝ Գեղեցիկ արվ-ների ակադ-ի նախագահ: Հեղինակ է «Մանոն» (1884), «Վերթեր» (1886), «Սաֆո» (1897), «Դոն Կիխոտ» (1910) օպերաների, օպերետների, 3 բալետի, նաև օրատորիաների, կանտատների, 200-ից ավելի ռոմանսների և երգերի:

Հռոմ. մրց. (1863):

ՄԱՄՆԻԿ-ԱԼԼԻՔԱՅԻՆ ԵՐԿՎՈՒԹՅՈՒՆ, *մասնիկային դուալիզմ*, *քվանտային մեխանիկայի* հիմնադրույթ, ըստ որի՝ միկրոմասնիկների վարքում դրսևորվում են ինչպես մասնիկային, այնպես էլ ալիք. հատկություններ:

ՄԱՄՆԻԿՆԵՐԻ ԴԻՖՐԱԿՑԻԱ (լատ.՝ difractus – բեկված, կոտրված), միկրոմասնիկների (էլեկտրոններ, նեյտրոններ, պրոտոններ, ատոմներ, մոլ-ներ ևն) ցրումը բյուրեղներից կամ հեղուկների ու գազերի մոլ-ներից, որն ուղեկցվում է ցրվող փնջի ինտենսիվության հերթագայվող մեծագույն ու փոքրագույն արժեքների առաջացմամբ: Մ. դ. համանման է լույսի դիֆրակցիային և դրսևորում է մասնիկալիք երկվություն, այսինքն՝ դիտվում է այն մասնիկների համար, որոնց *Դը Բրոյլի ալիքների* երկ-յունները ցրող կենտրոնների միջև եղած հեռ-յունների կարգի են: Դիֆրակցիայի պատկերը կախված է ցրող օբյեկտի ներքին կառուցվածքից: Մ. դ-ի վրա են հիմնված էլեկտրոնագրությունը և նեյտրոնագրությունը:

ՄԱՄՆԻԿՆԵՐԻ ՅՐՈՒՄ (ֆիզ.), նյութի մասնիկների բախման շարժընթաց. տարբերում են առաձգ. Մ. ց., երբ փոխվում են միայն նրանց իմպուլսները, և ոչ առաձգ. Մ. ց., երբ փոխվում են իմպուլսները և ներքին վիճակները:

ՄԱՍՇՏԱԲ (գերմ.՝ Maßstab), գծագրի, պլանի կամ քարտեզի վրա գծի երկ-յան հարաբերությունը գծի իրական երկ-յանը: Նշանակվում է կոտորակով, որի համարի-

չը հավասար է 1-ի, իսկ հայտարարը՝ գծի երկ-յան փոքրացման աստիճանը ցույց տվող թվին (օր.՝ 1:100 000): Գծագրերի Մ. հաճախ արտահայտվում է 1-ից մեծ թվով:

ՄԱՍՈՆՈՒԹՅՈՒՆ, ֆրանկմասոնություն (< ֆրանս. franc – maçonnerie – ազատ որմնադիր), աշխարհում խոշորագույն վերազգ. հաս. շարժումներից (XXI դ-ի սկզբի տվյալներով՝ 3–5 մլն-ից մինչև 9–10 մլն մարդ, մոտ 30 հզ. օթյակ, ժողով-ները փակ են, իսկ անդամակցությանը նախորդում է ձեռնադրման արարո-ղությունը): Երկրպագելով Տիեզերքի գե-րագույն ճարտ-ին՝ որպես բարձրագույն սկզբի՝ «կանոնավոր» Մ. թույլատրում է որևէ կրոնի դավանում («ազատական» Մ. աթեիզմն է): Մ-յան պատմությունը սկսվում է 1717-ին, երբ կազմակերպվել է 1-ին օրինական «Նոր ազատ որմնադիր-ների» կազմ-յունը՝ Լոնդոնի մեծ օթյակը (հետագայում՝ Անգլիայի մեծ օթյակ), որը միավորել է 4 օթյակները (ամենավաղը հիմնադրվել է 1691-ին): Մ-ի վերջն. նպա-տակները մասոնների բարոյական ինք-նակատարելագործման մասին ձգտում-ներից մինչև անկախ պետություններին և կառ-յուններին փոխարինող, աշխարհը ղեկավարող կազմ-յան ստեղծման մասին պնդումներն են: Մ-յան գլխ. կարգախոսը՝ «Ազատություն, եղբայրություն, հավասա-րություն»: XVIII–XIX դդ-ում Մ. տարածվել է մի շարք երկներում: Մ-յան անդամ-ները հայտնի պետ. և հաս. գործիչներ էին: Մասոն. շարժումը հետապնդվել է տարբեր պետություններում, իսկ շարժ-ման մասնակիցները հալածանքների են ենթարկվել: Մ. այժմ ունի շուրջ 6 մլն անդամ, որից միայն 480 հզ-ը՝ Անգլիա-յում, Իռլանդիայում և Շոտլանդիայում, ԱՄՆ-ում՝ 2 մլն:

ՄԱՍՉՅԱՆ Անահիտ Հակոբի (1900–1989), դերասանուհի: ՀԽՍՀ ժող. արտիստ (1950): Արմեն *Դուլակյանի* կինը: 1928–45-ին (տարբեր տարիների)՝ Լենինականի դրամատիկ., ԵՊՀԹ, 1945–58-ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնների դե-րասանուհի (Էմիլեմիա՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», Նատո՝ «Գիքոր»՝ ըստ Հ. Թու-մանյանի, Մարիա Ալեքսանդրովնա՝ Ի. Ֆ. Պոպովի «Ընտանիք», ևն): Նկարահանվել է «Սարոյան եղբայրներ» կինոնկարում (1968, Հայֆիլմ):

ՄԱՍՊԵՐՈ Գաստոն Կամիլ Շառլ (1846–1916), ֆրանսիացի եգիպտագետ: Ֆրան-սիայի վիմագրությունների ակադ-ի անդամ (1883): Կահիրեի Արլ. ինագիտ-յան ֆրանս. ինստ-ի հիմնադիրը (1881): «Արև-ելքի պատմություն» (1894) աշխ-յան մեջ տեղեկություններ կան նաև Հայաստանի, հայ-ասուրական, հայ-պարսկ. հարաբե-րությունների մասին:

ՄԱՍՍԱՉՈՒՍԵԹՍ (Massachusetts), նահ ԱՄՆ-ի Ատլանտ. ափի հս-ում: Տարած-քը՝ 21,5 հզ. *կմ²*, բն.՝ 6,7 մլն (2014): Վարչ. կենտրոնը՝ *Բոստոն*:

ՄԱՍՍԱՉՈՒՍԵԹՍԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, ԱՄՆ-ի խոշորագույն տեխ. համալսարաններից, միջազգ. նշանա-կության ԳՀ կենտրոն: Հիմնադրվել է 1861-ին Բոստոն ք-ում (1916-ից՝ Քեմբ-րիջում): 2015-ին ուներ ավելի քան 4 հզ. ուսանող, 6 հզ. ասպիրանտ:

ՄԱՍՍԵՅՈ (Massys) Քվենտին (1466–1530), նիդեռլանդացի գեղանկարիչ: Կրոն. և բարոյախոս. ժանրային կոմպոզիցիա-ներում («Փոխանակել է կնոջ հետ», 1514) համադրել է XV դ-ի նիդեռլ. և իտալ. Վե-րածննդի գեղ. սկզբունքները:

ՄԱՍՍՈՆ Միխայիլ Եվգեննիչ (1897–1986), ռուս. (ծագումով՝ ֆրանսիացի) արևելա-գետ, ինագետ: Ուզբ. ԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1944): Թուրքմ. ԽՍՀ ԳԱ ակադ. (1951): Վ. Մ. *Մասսոնի* հայրը: Միջին Ասիայի ինագիտ-յան դպրոցի հիմնա-դիրներից է: Աշխ-ները վերաբերում են մետաղաձուլության պատմությանը, քաղաքների ինագիտ. տեղագրությանը, արվ-ի պատմությանը, դրամագիտ-յանը, Միջին Ասիայի վիմագիտ-յանը:

ՄԱՍՍՈՆ Վադիմ Միխայլովիչ (1929–2010), ռուս. (ծագումով՝ ֆրանսիացի) ինագետ, արևելագետ: Ղրղըզստանի, Թուրքմենստանի ԳԱ-ների ակադ.: Մ. Ե. *Մասսոնի* որդին: 1982–98-ին՝ ՌԳԱ նյութական մշակույթի ինստ-ի տնօրենն: Պարբերացրել է Միջին Ասիայում մետա-ղի օգտագործման և Կենտր. Ասիայում մշակույթի ծագման ժամանակաշրջան-ները: Ղեկավարել է ինագիտ. խոշոր ար-շավախմբեր Միջին Ասիայի տարածքում, հետազոտել է մի շարք կարևոր հուշար-ձաններ: Անդրադարձել է Պարթևական և Քուշան. թագավորությունների դերին՝ համաշխ. պատմության մեջ:

ՄԱՍՏԱՐԱ, գ. ՀՀ Արագածոտնի մարզում: Այրարատ նահանգ-ի Արագածոտն գվռ-ի Մազդարա բնակավայրի տարածքն է: Ըստ Հ. Շահխաթունյանի՝ այստեղով է անցել Արքունի ճանապարհը, որի վրա եղել է «իջևանատուն արքունի»: Մ-ի տարածքում պահպանված ինագիտ. և ճարտ. հուշար-ձանները (մեծ խաչքարը՝ 1223, միջնադար. ամրոցի ավերակները, Ստեփանոս Նա-խավկայի, Սբ Հովհաննես եկեղեցիները ևն) վկայում են, որ միջնադարում այն եղել է նշանավոր բնակավայր:

ՄԱՍՏԱՐԱՅԻ ՍԼԻՒՎ, ՀՀ Շիրակի և Արմավիրի մարզերում: Սկիզբ է առ-նում Արագածի հվ-արմ. լանջից՝ 3220 *մ* բարձր-ից, թափվում Մեծամոր գետը: Երկ.՝ 98 *կմ*, ավազանը՝ 1580 *կմ²*: 2–3 տա-րին մեկ կրկնվում են ուժեղ սելավները, որոնք առաջանում են տեղատարափ ան-ձրևներից, երբեմն՝ ուժեղ ձնհալից: 1957-ի հունիսի 12-ի սելավային հոսքի ծախսը՝ 128 *մ³/վ*: Ավերիչ են եղել 1929, 1935, 1962, 1969-ի սելավները: Մ. ս-ի հունն Արմա-վիրի ջրանցքից մինչև Մեծամոր գետը թմբապատված է:

ՄԱՍՏԱՐԱՅԻ ՄՈՒԲԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ, VII դ-ի ճարտ. հուշարձան՝ ՀՀ Արագածոտնի մարզի Մաստարա գ-ում: Քառախորան, գմբեթավոր քառակուսի հորինվածք է (կառուցող՝ Գրիգորաս Վանական): Հավանաբար կառուցվել է V դ-ում, վերակառուցվել VII դ-ում: Ուշ միջնադարում եկեղեցին շրջապատվել է պարսպով, վերածվել բերդի: Մաստարա-յատիպ են Ոսկեպարի Սբ Աստվածածին (VII դ.), Արթիկի Մեծ (VII դ.), Հառիճա-վանքի Սբ Գրիգոր (VII դ.), Կարսի Սբ Առաքելոց (X դ.) եկեղեցիները:

ՄԱՍՏՐՈՅԱՆԻ (Mastroianni) Մարչելլո (1924–1996), իտալացի կինոդերասան: Վե-րամարմնավորման տաղանդը, քնարակա-նությունը և նուրբ անհատականությունը զուգակցել է հիմնականում Լ. Վիսկոնտիի, Ֆ. Ֆելլինիի, Վ. դե Սիկայի, Մ. Անտոնիո-նիի, Ն. Ս. Միխալկովի և ուր. ռեժ-ների ֆիլմերում («Սպիտակ գիշերներ», «Քաղցր կյանք», «Գիշեր», «Ամուսնալուծություն իտալական ձևով», «Ութ ու կես», «Արևա-ծաղիկներ», «Կանանց քաղաքը», «Ջինջե-րը և Ֆրեդը», «Սև աչքեր» ևն):

ՄԱՍՐԵՆԻ (Rosa), վարդազգիների ընտա-նիքի վարդ ցեղի վայրի թուփ (բարձր.՝ մինչև 1 *մ*), երբեմն՝ ծառանման (բարձր.՝ մինչև 3 *մ*): Հայտնի է 350–400 տեսակ՝ հս. կիսագնդում, առավելապես՝ բարեխառն և մերձարևադարձ. գոտիներում, ՀՀ-ում՝ 31՝ առատափուշ, ալրապատ, փափուկ, Ղազարյանի ևն: Զանգեզուրի, Սյունիքի, Սոսնովսկու և այլ Մ-ներ բնաշխարհիկ են: Աճում է լ-լանջերին, անտառեզրե-րին, թփուտներում, բաց տարածքներում: Պտուղը պարունակում է վիտամիններ (հատկապես՝ C), շաքարներ, թթուներ, աղաղանյութեր, հանք. տարրեր, եթերա-յուղեր ևն: Գեղազարդիչ է և մեղրատու: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՄԱՍՐԻԿ, Մազրա, գետ Սևանի ավազա-նում: Երկ.՝ 45 *կմ*, ավազանը՝ 685 *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 3,01 *մ³/վ* (Տորֆ դիտա-կետ), հոսքը՝ 94,8 մլն *մ³*: Կազմավորվում է Արլ. Սևանի լ-շղթայից սկիզբ առնող վտակներից: Մնումը գերազանցապես ձնաանձրևային է, նաև ստորերկրյա: Հոր-դանում է գարնանը: Ջրերն օգտագործում են ոռոգման համար:

ՄԱՍՐԻԿԻ ԱՐՏԵԶՅԱՆ ԱՎԱԶԱՆ, ճնշումային ջրերի ավազան Սևանա լճի հվ-արլ-ում: Եզրավորվում է Սևանի և Վարդենիսի լ-շղթաներով: Մակերեսը՝ 152 *կմ²* (ջրհավաք ավազանի հետ՝ 1151 *կմ²*): Միջլեռն. իջվածք է՝ լցված մոտ 500 *մ* հաստ-յան պլիոցեն-անթրոպոգենի լճագետ. նստվածքներով: Ավազանի ջրերի բնական պաշարը՝ 1,7 *մ³/վ*, որից 1,1 *մ³/վ* բեռնաթափվում է Մասրիկ գե-տում, մնացածը (0,6 *մ³/վ*) ստորերկրյա ճանապարհով՝ Սևանա լճում: Ջրերի մի մասն օգտագործվում է Գեղարքունիքի մարզի ջրամատակարարման և ոռոգման նպատակով:

ՄԱՍՐԻԿԻ ԳԱՀԸՏ, Գեղարքունիքի մար-զի հվ-արլ-ում՝ Մասրիկ գետի ստորին հոսանքի շրջանում՝ 2000 *մ* բարձր-յան վրա: Արմ-ում՝ նախկին Գիլլի լճի տեղում, կա տորֆ: Մշակում են կարտոֆիլ, ցորեն, ծխախոտ, բանջարեղեն:

ՄԱՍՐԻԿԻ ՋՐԱՆՑՔ, Մազրայի ջրանցք, սկիզբ է առնում Գեղարքունիքի մարզի Ակունք գ-ի շրջակայքի աղբյուրներից, 10-րդ *կմ*-ից սնվում է նաև Մասրիկ գետի ջրերից: Շահագործվում է 1937-ից: Երկ.՝ 24,4 *կմ*, ջրթողունակությունը՝ 2 *մ³/վ*: Ոռոգում է Վարդենիսի տարածաշրջանի հողատարածքները:

ՄԱՍՐՈՒՅ ԱՆԱՊԱՏ, ճարտ. հուշարձան ՀՀ Գեղարքունիքի մարզի Զորագյուղի արլ. եզրին: Արտաքուստ՝ ուղղանկյուն, ներսից՝ եռաբսիդ, անկյուններում 4 ավանդատներով գմբեթավոր ոչ մեծ կա-ռույց է: Վերանորոգվել է 1611-ին, 1974–78-ին, վերաբացվել 1997-ին:

ՄԱՍՈՒՆՔ, սրբերի մարմնի (երբեմն՝ նրանց իրերի) մասեր՝ տարբեր կրոննե-րում, որոնք դառնում են պաշտամունքի առարկա, քանի որ դրանց վերագրում են աստված. հրաշագործ զորություն: Փխր. իմաստով՝ անցյալի անանց հիշողությու-ներ պարունակող առարկա:

ՄԱՎԻՅԱՆ Միհրան Մինասի (1900–1983), հաս. գործիչ: Եղել է ՀՕԿ-ի (1921) վար-չության անդամ: Ֆրանսահայ մշակութ. միության (1949) հիմնադիրներից: Գերմ. օկուպացիայի տարիներին Ֆրանսիայում մասնակցել է Դիմադրության շարժմանը:

Հեղինակ է «Ոճիրի անդրաշխարհէն» (1976) գրքի:

ՄԱՎԻՍԱԿԱԼՅԱՆ (Մելիք-Մավիսակալյան) Մելիք Բաբկենի (ծ. 1937), դիրիժոր, կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1982): ՀՀ ժող. արտիստ (2012): 1964–65-ին՝ Հայաստանի պետ. էստրադ. նվագախմբի տնօրեն: Ռոբերտ ***Մավիսակալյանի*** եղբայրը: 1972–86-ին՝ ՀՀ հեռուստառադիոյի էստրադ. սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ. և դիրիժոր, 1991–97-ին՝ Թ. Ալթունյանի անվ. հայկ. ժող. երգի-պարի անսամբլի գեղ. ղեկ.: Հեղինակ է 4 կանտատի, օրատորիայի, «Ռեքվիեմ»-ի (Մեծ եղեռնի զոհերի հիշատակին), կոնցերտների, կամեր-գործիք. երկերի, կինոերաժշտության («Ախթամար», 1969, ևն):

Երիտասարդ կոմպոզիտորների համամիութ. մրցույթների (1969, 1971, Մոսկվա) դափնեկիր, Երևանի քաղաքապետի ոսկե մեդալ (2015):

ՄԱՎԻՍԱԿԱԼՅԱՆ Ռոբերտ Բաբկենի (1940–2003), հեռուստալրագրող, հրապարակախոս: Մելիք ***Մավիսակալյանի*** եղբայրը: 1975–98-ին՝ ՀՀ հեռուստառադիոպետկոմի փոխնախագահ: Հիմնադրել է «Նոր ալիք», «Հայաստան», «Նորք» հեռուստաընկ-ները, մի շարք հաղորդաշարեր: Հեղինակ է հեռուստաֆիլմերի: ՀՀ Պետ. մրց. (1987):

ՄԱՎԼԻԴ, **մավլյուդ** (արաբ. – ծնունդ), 1. ***Մուհամմեդ*** մարգարեի ծննդյան տոնը, որը նշում են մահմեդ. օրացույցի ռաբի ալ-ավար ամսվա 12-րդ օրը: 2. Մահմեդ. սրբերի հիշատակի օրեր (առւլիա), որի ժամանակ ուխտագնացություն (զիարա) է կատարվում նրանց գերեզմաններ: 3. Մուհամմեդ մարգարեին նվիրված բարեպաշտության չափածո ներբողներ:

ՄԱՎՅԱՆ Վահրամ Հակոբի (1926–1983), գրող, հասս. գործիչ: Հեղինակ է «Համեցող վերադարձ» (1956) բանաստեղծությունների, «Հայու բեկորներ» (1967), «Անկապ օրագիր» (1968), «Մխացող հոգիներ» (1977) պատմվածքների, էսսեների, օրագրությունների ժող-ների:

ՄԱՎՍՈԼՈՍ, ***Կարիայի*** տիրակալը (մ. թ. ա. մոտ 377–մոտ 353): Մ-ի դամբարանը ***Հալիկառնասում*** համարվել է ***աշխարհի յոթ հրաշալիքներից***:

ՄԱՎՐ Յանկա (Ֆեոդորով Իվան Միխայլովիչ, 1883–1971), բելառուս գրող: ԲԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1968): Հեղինակ է «Մարդ է գալիս» (1927), «Պրոֆեսոր Յիլյակովսկու ֆանտոմնքենան» (1954–55) գիտաֆանտաստիկ. երկերի, պատերազմի տարիներին երեխաների ճակատագրերի մասին պատմվածքների, «Ճանապարհ խավարից» (1948) ինքնակենսագր. վիպակի: Հայ. հրատարակվել է «ՊՏՄ» (1961) գործը:

ԲԽՍՀ Պետ. մրց. (1972, հետմահու):

ՄԱՎՐԵՐ (լատ.՝ Mauri, < հուն. mauros – թուխ), 1. Մավրիտանիայի հիմն. բնակչությանը հռոմեացիների տված և Պիրենեյան թ-կղզու ու Հս. Աֆրիկայի արմ. մասի մահմեդ. բնակչության (միջին դարերում՝ Արմ. Եվրոպայում) անվանումը: 2. (Ինքնանվանումը՝ ալ-բեյդան) արաբ. ժողդ, Մավրիտանիայի (2,6 մլն) և Արմ. Սահարայի (400 հզ.) հիմն. բնակչությունը: Ապրում են նաև Սարոկկոյում, Մալիում, Գամբիայում: Խոսում են արաբ-ի մավրիտան. ենթաբարբառով: Սուննի մահմեդական են: 3. **Մ. ցեյլոնյան**, ժողդ Շրի Լանկայում, արաբ վերաբնակիչների (VII–XII դդ.) և բնիկ սինգալուհիների ու թամիլուհիների ամուսնությունից առաջացած սերունդները (ավելի քան 1,3 մլն, 2001): Խոսում են սինգալերենով, թամիլերենով, պորտուգ-ով, անգլ-ով և կրեոլացված մալայերենով: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են:

ՄԱՎՐԻԿԻՈՍ, **Մորիկ** (ծ. թ. անհտ–602), Բյուզանդիայի կայսր՝ 582-ից: Պարսկաբյուզ. պայմանագրով (591)՝ Հայաստանի՝ Բյուզանդիային անցած մասում վարել է իշխանների ուժերը ջլատելու և հայոց ռազմ. հզորությունը ոչնչացնելու քաղաքություն: Հայաստանում քաղկեդոնականություն տարածելու նպատակով Ավանում հիմնադրել է հայ քաղկեդոն. հակաթոռ կաթողիկոսություն: Մ-ի օրոք Շիրակաշատը կոչվել է Մավրիկապոլիս: 602-ին ապստամբած բանակը կայսր է հռչակել Փոկասին, որի հրամանով Մ. և նրա որդիներն սպանվել են:

ՄԱՎՐԻԿԻՈՍ, **Մավրիկիայի Հանրապետություն** (անգլ.՝ Republic of Mauritius, ֆրանս.՝ République de Maurice), պետություն Հնդ. օվկ-ի համանուն և հարակից որոշ կղզիներում: Տարածքը՝ 2,04 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,96 մլն (2013): Մայրաքաղաքը՝ ***Պորտ Լուի***: Պետ. լեզուն՝ անգլ.: Կառավարման ձևը՝ խորհրդարանահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ Ազգ. ասամբլեան: Հավատացյալների մեծ մասը հնդուական և կաթոլիկ է: Բաժանված է 9 վարչ. օկրուգների (Մավրիկիոս կղզի) և 1 ինքնավարության (Ռոդրիգես կղզի): Անդամակցում է ՄԱԿ-ին, Ազգերի համագործակցությանը ևն: Տնտ-յան հիմքը միջազգ. զբոսաշրջությունն է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 14,2 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է հագուստ, շաքար, ծաղիկներ, ձուկ և ծովամթերք ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ, դեղեր, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ մավրիկիոսյան ռուփի:

Մավրիկիոս կղզին արաբ ճանապարհորդներին հայտնի էր X դ-ից: Մինչև XVI դ. անմարդաբնակ էր: XVI դ-ում կղզում հայտնվել են պորտուգալացիները: 1598-ին զավթել են հոլանդացիները և անվանել Մ. լի պատիվ իրենց արքայազն Մորից (Maurits) Օրանցու: 1715-ին կղզին գրավել են ֆրանսիացիները և վերանվանել Իլ դը Ֆրանս (Ֆրանսիայի կղզի): 1810–1968-ին եղել է Բրիտ. տիրույթ: 1825-ին ստեղծվել է խորհրդակց. մարմին՝ Օրենսդր. խորհուրդը (անգլիացի նահանգապետին կից): 1957-ին ընդլայնվել են Օրենսդր. խորհրդի իրավունքները: 1964-ին կազմվել է ազգ. կառ-յուն: 1967-ին կղզին ստացել է ինքնակառավարվող տարածքի կարգավիճակ: 1968-ին անկախացել է՝ Բրիտ. համագործակցության շրջանակներում: 1992-ից՝ արդի անվանումով:

ՄԱՎՐԻՏԱՆԻԱ, **Մավրիտանիայի Իսլամական Հանրապետություն** (ալ-Ջումհուրիա ալ-Իսլամիա ալ-Մուրիտանիա), պետություն Արմ. Աֆրիկայում: Տարածքը՝ 1,03 մլն *կմ*^{2}, բն.՝ 3,36 մլն (2012): Մայրաքաղաքը՝ ***Նուակշոտ***: Պետ. լեզուն՝ արաբ.: Կառավարման ձևը՝ նախագահահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը (Ազգ. ասամբլեա և Սենատ): Հավատացյալների մեծ մասը մահմեդական է: Բաժանված է 13 վարչ. մարզերի: Անդամակցում է ՄԱԿ-ին, Աֆրիկյան միությանը, ԱՀԿ-ին ևն: Աղքատ, զարգացող երկիր է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 2,1 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է երկաթի հանքանյութ, ծովամթերք, պղնձի խտանյութ, ոսկի, նավթ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ մավրիտան. ուգիյա:

VII–XI դդ-ում Մ-ի հվ-ը մտել է Արմ. Աֆրիկայի միջնադար. պետությունների կազմի մեջ, իսկ հս-ում եղել են բերբերների պետ. կազմավորումներ: XI դ-ի կեսին Մ-ի տարածքում առաջացել է Ալմորավյանների հզոր պետությունը (մինչև 1146-ը), որն ընդգրկել է նաև Մարոկկոյի և Արմ. Ալժիրի տարածքները: XIII–XIV դդ-ում Մ-ի տարածքը եղել է միջնադար. Մալի պետության կազմում: XIV–XV դդ-ում Մ. ներխուժած արաբ. մաքիլ ցեղերն արագացրել են XI դ-ից սկսած Մ-ի մահմեդականացման ու արաբացման ընթացքը: XV դ-ում Մ. մուտք են գործել պորտուգալացիներն ու իսպանացիները, այնուհետև՝ հոլանդացիները, անգլիացիներն ու ֆրանսիացիները: 1783-ի Վերսալի հաշտությամբ (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իսպանիա) Մ-ի առափնյա շրջանները ճանաչվել են բացառապես Ֆրանս. ազդեցության ոլորտ: 1920-ին երկիրը պաշտոնապես հայտարարվել է Ֆրանս. գաղութ՝ Ֆրանս. Արմ. Աֆրիկայի կազմում: ԵՀՊ-ից հետո ծավալվել է Մ-ի ազատագր. շարժումը: 1946-ից Ֆրանսիայի «Անդրծովյան տարածք» էր, 1958-ից դարձել է ինքնավարություն՝ Ֆրանս. համագործակցության շրջանակներում: 1960-ի նոյեմբ. 28-ին հռչակել է իր անկախությունը: 1961-ին ընդունվել է սահմանադրություն: 1978–91-ին երկիրը ղեկավարել են զինվորականները: 1991-ին ընդունվել է նոր սահմանադրություն: 2005-ին և 2008-ին տեղի են ունեցել նոր ռազմ. հեղաշրջումներ: 2009-ին Աֆրիկ. միության միջնորդությամբ ստորագրվել է համաձայնագիր՝ Մ-ում սահմանադր. օրինականության վերականգնման և նախագահ. ընտրությունների անցկացման վերաբերյալ:

ՄԱՏ (պարսկ.՝ mât – բառացի՝ մահացած), 1. պարտված դիրք շախմատում, երբ արքան չի կարողանում պաշտպանվել հակառակորդի գրոհող խաղաքարերից. պարտիայի ավարտը: 2. Փափուկ մարզ. ներքնակ, որը մարզիկին պաշտպանում է ընկնելիս վնասվածքներ ստանալուց, տարբեր ցատկերի և ոստյունների ժամանակ մեղմացնում է վայրէջքը:

ՄԱՏԱ ՀԱՐԻ (Mata Hari, Մարգարիտա Գերտրուդա Զելլե, 1876–1917), նիդեռլանդացի պարուհի, կուրտիզանուհի, լրտես: 1905-ից հանդես է եկել էկզոտիկ պարերով (Փարիզ, Մադրիդ, Միլան, Բեռլին ևն): Համագործակցել է գերմ. հետախուզության, ապա՝ ֆրանս. հակահետախուզության հետ: 1917-ին ֆրանս. հակահետ-ները ձերբակալել են, ապա՝ գնդակահարել:

ՄԱՏԱՂ, Հայ եկեղեցու ծիս. ավանդություններից: Ըստ ***Գրիգոր Տաթևացու*** ստուգաբանության՝ «մատո աղ» (մատուցիր աղը): Մ. Աստծուն ընծայաբերվող նվերն է: Մատուցվում է արջառ, ոչխար, սուրբ թռչուն (հավ, աղավնի): Աղավնին չեն զոհում, այլ բաց են թողնում: Մ-ի միսը պետք է եփվի օրհնված աղով, կամ անա-

սունին մորթելուց առաջ պետք է աղ տալ: Աղի օրինությամբ՝ Մ–ի միսը տարբերվում է կուռքերին մատուցած զոհերից: Մ–ի սովորությունը գոյություն ունի IV դ–ից:

ՄԱՏԱՆԻ, մատի զարդ: Տարածված է աշխարհի շատ ժողդ–ների մոտ: Նախն. (ոսկրե) Մ–ները երևան են եկել քարի դարում: Հայկ. լ–աշխարհում մետաղե Մ–նե–րը հայտնի են մ. թ. ա. III հզ–ամյակից. բազմատեսակ Մ–ներ են հայտնաբերվել Լճաշենի, Արթիկի, Մեծամորի, Լոռերեր–դի և այլ հնավայրերի դամբարաններից: Հինհայկ. արվ–ի կատարյալ ստեղծագոր–ծություն է Հայոց թագուհի պատկերող գեմման (մ. թ. ա. I դ., պահվում է Փարիզի գրադարանում): ՀԱԵ Մ. կրել արտոնել է միայն եպս–ներին: Կնքամատանիները համարվել են թագավորների, իշխանների իշխանության խորհրդանիշ: Հայերի մոտ հարատևում է հարսին նշանի մատանի հանձնելու սովորույթը՝ որպես զույգերի միությունը վավերացնող խորհրդանշան:

ՄԱԹԵՋԻՈՒՍ (Mathesius) Վիլեմ (1882–1945), չեխ լեզվաբան: Պրահայի լեզվաբ. դպրոցի հիմնադիրը և 1–ին նախագահը: Զևակերպել է նախադասության արդիա–կան մասնատման սկզբունքները: Հեղի–նակ է ոճագիտ–յանը, խոսքի մշակույթին, լեզվ. նորմին վերաբերող աշխ–ների:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, 1. տպագիր և ձեռագիր արտադրանքի հաշվառման ու տեղեկատվության ապահովման ոլորտ: 2. Որևէ թեմայով գրկ–յան ամբողջ. կամ ընտրովի ցանկեր, նման ցանկերի (ցու–ցիչներ, գրացուցակներ, ամփոփագրեր) հատուկ հրտ–յուններ: 3. Պարբ. հրտ–յուն–ների բաժին, որը ներկայացնում է նոր լույսընծայված գրքերի վերլուծությունը:

ՄԱՏԵՆԱԳԻՐ, մատյան (գիրք) գրող հայ հեղինակները V–XVIII դդ–ում (Մովսես Խորենացի, Կորյուն, Եղիշե, Դավիթ Անհաղթ, Անանիա Շիրակացի, Մխի–թար Գոշ, Ներսես Լամբրոնացի և ուր.), ինչպես նաև այդ գրվածքները: Տես նաև *Մատենագրություն*:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, 1. մատյան գրե–լու արվ–ը: 2. Մինչև XVIII դ–ը ստեղծված այն ամենը, ինչ գրառված է մատյաննե–րում՝ անկախ գրավոր խոսքի տեսակից (գեղ., ուս., քարոզչ., գիտ. ևն): Իմաստով համարժեք է արդի «գրականություն» հասկացությանը: Հայ Մ., հատկապես՝ պատմագրությունը, աշխարհի ամենա–զարգացած գրկ–ներից է: Բազմաթիվ ձե–ռագրեր սկզբնաղբյուր են ոչ միայն հայ, այլև հարևան ժողդ–ների պատմության: Համաշխ. համբավ են վայելում թարգմ. Մ–յան այն երկերը, որոնց հուն., ասոր., և այլ հին լեզուներով բնագրերը չեն պահպանվել, և մեզ են հասել շնորհիվ հայ. թարգմ–յունների:

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ձեռագիր և տպագիր մատյանների (գրքեր) պահպանումն ու հաս. օգտագործումը կազմակերպող հաս–տատություն (գրադարան): Միջնադար. Հայաստանում կոչվել են նաև գրատուն, գրանոց, արկեղք գրոց, գանձատուն, ձե–ռագրատուն, նշխարանոց, դիվան ևն: Եղել են հիմնականում վանքերում, հաճախ՝ հա–տուկ շինություններում: Մ–ում պահել, գրել և ընդօրինակել են ձեռագրեր:

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան, Հին ձեռագրերի ԳՀԻ–թանգարան (1959–ից), հայ. ձե–ռագիր մատյանների ամենախոշոր պահոցը: Ստեղծվել է 1921–ին՝ Էջմիած–նի ձեռագրատան հիմքի վրա: 1939–ին տեղափոխվել է Երևան: 1962–ին կոչվել է Մեսրոպ Մաշտոցի անունով: Տարբեր երկրներում պահվող շուրջ 31 հզ. հայ. ձեռագրերից 20 280–ը (11 233–ը՝ հայ. հիմն. ձեռագրեր, 420–ը՝ հայ. նոր, 2143–ը՝ հայ. պատառիկներ, 530–ը՝ հայ. հմայիլ–ներ, շուրջ 6 հզ–ը՝ այլալեզու) պահվում են Մ–ում: Մ–ի հիմն. գործառույթը հին ձեռագրերի պահպանումն է ու վերական–գնումը, թվայնացումը, ձեռագիր հուշար–ձանների հավաքումը, հայ. ձեռագրերի մայր ցուցակի կազմումը, միջնադար. տարաբնույթ բնագրերի, ինչպես նաև հայկ. մանրանկարչության հուշարձան–ների ուսումնասիրությունն ու հրապա–րակումը, միջնադար. հայկ. աղբյուրնե–րի օտար լեզուներով թարգմանումն ու հրատարակումը, գիտահանրամատչելի գրքույկների միջոցով հայ ժողդ–ի ձեռա–գիր մշակույթի տարածումը ևն: 1941–ից հրատարակում է *«Բանբեր Մատենադա–րանի»* գիտ. հանդեսը:

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ», առողջապ. ամսագիր (1882–85, Կ. Պոլիս): Խմբ.՝ Մանվել–Բարունակ Ութուճյան:

ՄԱՏԵՆԱՆԻԾ, 1. **գրքանիշ, գրքապիտակ, էքսլիբրիս**, նկարի կամ պիտակի տեսքով գրքանշան՝ գրքի տիրոջ անունով կամ խորհրդանշանով, որ փակցվում է գրքի կազմի ներսի կողմից: Առաջին տպագիր Մ–երը ստեղծվել են Գերմանիայում XV դ–ի կեսերին: Մ–եր են ստեղծել Ա. Դյու–րերը, Լ. Կրանախը, Հ. Հոլբայն Կրտսերը և ուր., հայերից՝ Վ. Սուրենյանցը, Մ. Սարյանը, Հ. Կոջոյանը, Ռ. Բեդրոսովը, Ա. Սամաջանյանը, Հ. Մամյանը, Ռ. Ջուլիակ–յանը և ուր.: 2. **Մ. գրադարանային, գրա–նիշ, տեղանիշ, շիֆր** (< ֆրանս.՝ chiffre), գրադարան. ֆոնդում փաստաթղթի տեղի պայման. նշանը՝ տառաթվային տեսքով:

ՄԱՏԵՆՃՅԱՆ Սամբրե Վարդանի (1880–1920), գրականագետ, մանկավարժ: Թիֆ–լիսի Ներսիսյան դպրոցի համար գրել է «Յունական գրականութիւն» (1911) ձեռ–նարկը: 1912–17–ին Արտաշես և Սանուկ *Արեղյանների* հետ կազմել է «Գրագէտ» ուղղագրության դասագիրքը (1912–17):

ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ (լատ.՝ materialis – նյու–թական), փիլ. ուղղություն, որը մատե–րիան դիտարկում է որպես աշխարհի բա–ցատրման հիմն. սկզբունք: Մատերիան առաջնային է, գիտակցությունը և մտա–ծողությունը երկրորդային են և իրենց բնույթով՝ նյութ.: Հիմն. հասկացությունը «մատերիան» է, այսինքն՝ աշխարհը (բնությունը) օբյեկտիվ իրականություն է: Մ. հակադիր է *իդեալիզմին*: «Մ.» հաս–կացությունն առաջացել է XVII դ–ում: Մ–ի պատմ. ձևերն են՝ անտիկ Մ. (Դեմոկրիտ, Էպիկուր), Վերածննդի դարաշրջանի Մ. (Բ. Թելեզիո, Ջ. Բրունո), մետաֆիզ.՝ XVII–XVIII դդ–ի Մ. (Գ. Գալիլեյ, Ֆ. Բեկոն, Թ. Հոբս, Պ. Գասենդի, Ջ. Լոկ, Բ. Սպինո–զա), XVIII դ–ի ֆրանս. Մ. (Ջ. Լամետրի, Կ. Հելվեցիուս, Պ. Հոլբախ, Դ. Դիդրո), մար–դարան. Մ. (Լ. Ֆոյերբախ), դիալեկտիկ. Մ. (Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Վ. Ի. Լենին): XIX դ–ի մի շարք հայ մտածողների (Խ. Աբովյան, Ս. Պալասանյան, Ս. Ոսկան–յան, Ա. Գարագաշյան, Գ. Կոստանդյան) հայացքներում Մ–ի աղբյուրը մի կողմից՝ անմիջականորեն եվրոպ. միտքն էր՝ XVIII դ–ի ֆրանս. Մ., XIX դ–ի բնապատմ. Մ., ինչպես նաև մատերիալիստորեն մեկ–նաբանված պոզիտիվիզմը, իսկ մյուս կողմից՝ ռուս հեղ. դեմոկրատների Մ., որի անմիջ. ազդեցությամբ ձևավորվել են Մ. Նալբանդյանի և հայ առաջադեմ մի շարք մտածողների փիլ. հայացքները:

ՄԱՏԹԵՈՍ, Մատթեոս ավետարանիչ (I դ.), Հիսուսի 12 առաքյալներից, Ընդհանր. եկեղեցու սուրբ: Նոր կտակարանի կանո–նի գրքերից 1–ին Ավետարանի հեղինակը (Ավետարան ըստ Մատթեոսի, I դ.), մինչև Քրիստոսին աշակերտելը հավանաբար եղել է մաքսավոր. ավանդությունը Մ–ին նույնացնում է Ավետարանում հիշա–տակվող Ղևի մաքսավորի հետ: Ըստ ավանդության՝ Մ. 15 տարի Ավետարան է քարոզել Սիրիայում, Մակեդոնիայում, Պարսկաստանում և Պարթևստանում: Մարտիրոսվել է Եթովպիայում:

ՄԱՏԹԵՈՍ Ա. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ, Չուհաճյան (1802–1865), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1858–ից: 1844–48–ին եղել է Կ. Պոլսի հայոց պատրիարք: Վերաբա–ցել է (1845) Սկյուտարի ճեմարանը. նրա օրոք քաղաքում գործել են 25 վարժարան, բազմաթիվ տպարաններ: Կաթողիկոս ընտրվելով՝ փորձել է վերանայել 1836–ի «Պոլոժենիե»–ն: 1861–ին հաստատել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի, ապա՝ թեմ. դպրոցների կանոնադրությունները, նպաստել կրթության աշխարհականաց–մանը: Հեղինակ է կրոնագիտ. ու աստվա–ծաբան. աշխ–ների:

ՄԱՏԹԵՈՍ Բ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ, Իզմիրլյան (1845–1910), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1908–ից: 1894–96 և 1908–ին՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք: Պայքարել է Արմ. Հայաստանում քաղ. բարենորո–գումներ անցկացնելու համար: 1896–ին աքսորվել է Երուսաղեմ [ազատվել է երիտթուրք. հեղաշրջումից (1908) հետո]: Իր հաստատակամության համար կոչ–վել է Երկաթյա պատրիարք: Հեղինակ է Սբ Էջմիածնի ընդհանր. իրավունքները պաշտպանող կրոն. աշխ–ների:

ՄԱՏԹԵՈՍ ԴՊԻՐ ՊԱԼԱՏԵՑԻ, XVIII դ–ի մատենագիր, տոմարագետ: Կ. Պոլսում՝ իրենց տանը, բացել է դպրոց, որտեղ դասավանդել է քրոջ՝ *Բոսբիոն Նուպար Պալատեցու* հետ: 1776–78–ին կազմել է «Տետրակ տօնացոյցի» կրոն. տոնացույց:

ՄԱՏԹԵՈՍ ԾԱՌԵՑԻ (1590–ական թթ.–1661), տպագրիչ, Ամստերդամի հայկ. տպագրության հիմնադիրը: *Հակոբ Դ Ջուղայեցու* հանձնարարությամբ գնացել է Վենետիկ, ստացել տպագրության թույլ–տվություն, ապա մեկնել է Ամստերդամ, պատվիրել հայկ. տպատառեր, հիմնա–դրել տպարան և 1660–ին սկսել տպագրել Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» պոե–մը, որը չի ավարտել նյութ. դժվարութ–յունների պատճառով: *Ավետիս Դպիրեցը* փակել է տպարանի պարտքերը, իսկ Մ. Ծ–ու մահվանից հետո շարունակել է նրա գործը, ավարտել գրքի տպագրությունը:

ՄԱՏԹԵՈՍ ԿԻԼԻԿԵՑԻ, Սիլիճեցի, XIII դ–ի մանկավարժ, գրիչ: 1283–ին Գլաձորի համալսարանում աշակերտել է *Ներսես Մշեցուն*: Վերջինիս պատվերով 1283–84–ին ընդօրինակել է գիտ. բնագրերի հա–րուստ ժող. (Վնն. մտնդ., ձեռ. № 571): Ձեռնադրվել է վրդ., ապա դասավանդել Այրարատ գվռ–ի Կողբի վանքում:

ՄԱՏԹԵՈՍ ՋՈՒՂԱՑԵՑԻ, XIV դ–ի վերջ–XV դ–ի սկզբի աստվածաբան–իմաստա–սեր, մանկավարժ, գրիչ: Աշակերտել է *Հովհան Որոտնեցուն* և *Գրիգոր Տաթևա–ցուն*: Պայքարել է ունիթոր. շարժման դեմ:

Մ. Ջ. հայտնի է որպես հմուտ և հանրագիտակ մեկնիչ: Կրոնաիմաստասիր. հարցերում հետևել է հատկապես Տաթևի դպրոցում մշակված աստվածաբան–բնագանց. սկզբունքներին: Սոցիալ. անհավասարությունը համարել է ի վերուստ տրված աստված. կարգ, որը հարկավոր է պահպանել: Մարդուն դիտել է իբրև հաս–քաղ. էակ: Թողել է հարուստ գր. ժառանգություն՝ գանձեր, տաղեր, մեկնություններ, երկեր, քարոզներ, որոնք ունեն պատմաճանաչող. կարևոր արժեք: Հեղինակ է «Վասն քարոզութեան բանի» (1393), «Մեկնութիւն Գործոց առաքելոց» (1411), և այլ աշխ–ների:

ՄԱՏԹԵՈՍ ՎԱՆԱՆԴԵՑԻ, **Հովհաննիսյան** (մոտ 1630–40–ական թթ.–մ. թ. անհտ), տպագրիչ, վրդ.: 1670–ին մեկնել է Եվրոպա, Լիվոռնոյում գրաշարություն է սովորել *Ոսկան Երևանցու* տպարանում: 1683–ին մեկնել է Ամստերդամ, հիմնադրել է տպարան և 1685–ին տպագրել Շարակնոց: Շուտով նրան են միացել *Ղուկաս* (1690–ին), *Թոմմաս* (1694–ից՝ տպարանի տնօրեն) և *Միքայել* (1696–ին) *Վանանդեցիները*: Մ. Վ. այստեղ աշխատել է մինչև 1704–ը, տպագրել մոտ 15 անուն գիրք, այդ թվում՝ իր «Ոսկեայ դուռն դպրատան» (1699–1700) դասագիրքը և «Բնաբանութիւն իմաստասիրական...» (հ. 1–2, 1702) փիլ. երկը (երկուսն էլ համահեղ.՝ Ղուկաս Վանանդեցի):

ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ (XI դ–ի 2–րդ կես–մոտ 1144), ժամանակագիր: Ենթադրվում է, որ «Ժամանակագրութիւնը» գրել է 1113–38–ին: Բաղկացած է 3 մասից. 1–ինն ընդգրկում է 952–1051–ի, 2–րդը՝ 1052–1101–ի, 3–րդը՝ 1102–37–ի իրադարձությունները: Հատկապես արժեքավոր է վերջինը, որտեղ հեղինակը նկարագրել է իր ժամանակը: Մ. Ու–ու «Ժամանակագրութիւնը» շարունակել է *Գրիգոր Երեցը* և ավարտել 1162–ի դեպքերով:

ՄԱՏԹՈՒՍ (Matthus) Զիգֆրիդ (ծ. 1934), գերմանացի կոմպոզիտոր: Կամեր. օպերայի միջազգ. ամառ. փառատոնի (1991, Ռայնսբուրգ) հիմնադիրը: Հեղինակ է 15 օպերայի («Երգ Կոռնետ Քրիստոֆ Ռիլկեի սիրո և մահվան մասին», 1984, ևն), 3 բալետի, հեռուստառադիոերեմադրությունների երաժշտության, «Լամենտո» (2007) վոկալ–գործիք. կոմպոզիցիայի և այլ գործերի: Գերմանիայի Ազգ. մրց.:

ՄԱՏԻՆՅԱՆ Լևոն Արշալույսի (1923–2016), նյարդաֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ–ր (1970), պրոֆ. (1986): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (1984): Աշխ–ները վերաբերում են նյարդաններզատիչ փոխհարաբերությունների մեխանիզմներին, օրգանիզմի փոխհատուցողահարմարվող. շարժընթացների էվոլյուցիոն ֆիզիոլոգիային, վնասված ԿՆՀ–ի առանձնահատկությունների ուսումնասիրմանն ու բուժման եղանակների մշակմանը: Նյու Յորքի ԳԱ (1995), Էկոլոգիայի և կենսագործունեության անվտանգության միջազգ. ակադ–ի (1996) անդամ:

ՌԴ Մ. Վ. Լոմոնոսովի անվ. ոսկե մեդալ (2003):

ՄԱՏԻՆՅԱՆ Կառլեն Ռաֆայելի (ծ. 1956), գրականագետ, բանասեր, թարգմանիչ: Բանասիր. գիտ. դ–ր (2002), պրոֆ. (2004): Հեղինակ է «Գերմանական ռոմանտիկական կատակերգությունը» (1986), «20–րդ դարի երկրորդ կեսի ավստրիական դրամատուրգիան» (2002) աշխ–ների: Թարգմանել է Է. Ելինեկի, Պ. Զյուսքինդի, Գ. Գրասի և ուր. գործերից:

Տարվա լավագույն թարգմանիչ (2002, Ավստրիայի գր. ընկ.):

ՄԱՏԻՆՅԱՆ Հրաչիկ Վահանի (1912–1988), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դ–ր (1971), պրոֆ. (1973): Աշխ–ները վերաբերում են քլորոպրեն. թունավորման դեպքում սպիտակուցների փոխանակության ֆերմենտ. համակարգերի և որոշ օրգանների ֆունկցիաների փոփոխություններին ու թիոսուլֆատի հակաքլորոպրեն. ազդեցությանը:

ՄԱՏԻՆՅԱՆ Սերգեյ Հայկի (ծ. 1931), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1966), պրոֆ. (1969): ՀՀ ԳԱԱ ակադ. (1990, թղթ. անդամ՝ 1982–ից): 1994–ից՝ ԱՄՆ–ում: Աշխ–ները վերաբերում են թույլ էլեկտրամագնիս. և ուժեղ փոխազդեցություններին, տարր. մասնիկներին, դաշտի քվանտ. տեսությանը և նեյտրոն. աստղաֆիզիկային: Հայտնաբերել է քվանտ. քրոմոդինամիկայի վակուումի անկայունությունը, նաև ոչ աբելյան տրամաչափ. դաշտերի դինամիկ քաոսը: ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան:

ՄԱՏԻՆՅԱՆ Ստեփանոս (1843–1869), դերասան: Արևելահայ թատրոնի հիմնադիրներից: 1863–ից խաղացել է Թիֆլիսի թատերախմբերում, ազգ. կենցաղ–կատակերգ. դերերի վարպետներից էր (Կիվկիվ, Սարուխան՝ Ն. Փուղինյանի «Դալալ Ղաղո», «Հազար թումանանոց կաբա», Հովակիմ՝ Մ. Տեր–Գրիգորյանի «Ժլատ», ևն):

ՄԱՏԻՍ (Matisse) Անրի (1869–1954), ֆրանսիացի գեղանկարիչ, գրաֆիկ, քանդ., բեմանկարիչ: Ֆովիզմի առաջատարներից: Ցայտուն և մաքուր գույներով նկարներում, պարզ կոմպոզիցիաներում («Պար», 1910, «Կարմիր ձկներ», 1911), վիտրաժներում, փորագրություններում և վիմագրություններում արտահայտել է աշխարհի հանդիսավոր գունագեղությունը:

ՄԱՏԻՏԵՂ, (Polygonum, բառացի՝ բազմանկյուն), **հավկտերի, հնդկացորեն**, մատիտեղազգիների ընտանիքի միամյա կամ բազմամյա խոտաբույսերի, հազվադեպ՝ կիսաթփերի ցեղ: Հայտնի է մոտ 300, մշակության մեջ՝ 20, ՀՀ–ում՝ 20 տեսակ: Որոշ տեսակներ դեղաբույսեր են, մեղրատու: Կան նաև կերային, գեղազարդիչ, համեմունք. տեսակներ:

ՄԱՏՅԱՆ, 1. մագաղաթե կամ թղթե ձեռագիր կամ հնատիպ գիրք, նաև ի մի հավաքված վավերագրերի հատոր, այն ամենը, ինչը գրառվել է և խմբովին (կամ առանձին թղթով, մագաղաթով) զետեղվել նույն կազմի մեջ: 2. Դիվանատներում, դատարաններում, եկեղեցիներում և այլ հաստատություններում գործածվող փաստաթղթերի ժող–ներ: «Մ.» են անվանվում նաև ուսուցչ., հաշվապահ., գործավար. և գրասենյակ. տետրերը, ցուցակները, հաշվեմատյանները:

ՄԱՏՅԱՆ ԳՈՒՆԴ, **մատենիկ գունդ**, հին ժամանակներում պարսկ. բանակի ընտրյալ հեծելազորը: Գունդը համարվել է «անմահ», ընկածներին անմիջապես փոխարինել են նոր հեծյալներ: Մ. գ. է կոչվել նաև *Ավարայրի ճակատամարտում* (451):

ՄԱՏՅՈՒԽԻՆ Նիկոլայ Յակովլևիչ (1927–1984), հաշվիչ մեքենաների բնագավառի ռուս գիտնական: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1979): Աշխ–ները վերաբերում են համապիտանի ԷՀՄ–ների և հաշվող. համակարգերի միկրոծրագրավորմանը, ծրագրավորման ավտոմատացմանը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1976):

ՄԱՏՅՈՒՇԻՆ Միխայիլ Վասիլևիչ (1861–1934), ռուս գեղանկարիչ, կոմպոզիտոր, արվ–ի տեսաբան: Գեղանկարչության մեջ փորձառել է գունադաշտի դինամիկան («Գույնի շարժումը տարածության մեջ», 1917–18): Գրել է «Հաղթանակ արևի նկատմամբ» ֆուտուրիստ. օպերան (Վ. Խլեբնիկովի և Ա. Ս. Կրուչենիխի տեքստով, բեմ.՝ 1913, ձևավորումը՝ Կ. Ս. Մալևիչի), երաժշտ–տես. աշխ–ներ:

ՄԱՏՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, **դակտիլոգրաֆիա** (< հուն. daktylos – մատ. և *...գրաֆիա*), *մատնահետության* գրավոր ձևը՝ մատով գիր՝ որևէ հարմար մակերևույթի վրա՝ պայման. նշաններ պատկերող այբուրենի միջոցով:

ՄԱՏՆԱԴԻՏՈՒՄ, **դակտիլոսկոպիա** (< հուն. daktylos – մատ և *...սկոպիա*), քրեագիտ–յան բաժին. ուսումնասիրում է ձեռքի մատների եղնգային ֆալանգների ափակողմյան գծանախշերի առանձնահատկությունները, անհատականությունը՝ անձի նույնականացման քր. արձանագրման և հանցագործի հետախուզման համար:

ՄԱՏՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, **դակտիլոլոգիա** (< հուն. daktylos – մատ և *...լոգիա*), խոսքի յուրահատուկ ձև, խուլերի ու համրերի հաղորդակցման միջոց, որի ընթացքում բառերն արտահայտվում են ձեռքի մատների միջոցով: Առաջինը մշակել է Պ. Պենսենը (XVI դ., Իսպանիա): ՀՀ–ում կիրառվել է 1961–ից (Վ. Խալաթյան)՝ ռուս. այբուրենի հիման վրա. բաղկացած է 39 ստեղնային նշաններից: Հրատարակվել է «Հայկական ժեստերի լեզվի բառարան» (2001, Վ. Խաչատրյան):

ՄԱՏՆԱՎԱՆՔ, **Մադավանց**, XIV դ–ի ճարտ. համալիր Վանա լճից հս–արմ.՝ Ախլաթի (Խլաթ) մոտակայքում: Բաղկացած է ժայռափոր եկեղեցուց և կից գավթից: Սբ Աստվածածին եկեղեցին դահլիճ տիպի է՝ 2 կողմերում ավանդատներով (այժմ՝ ավերակ):

ՄԱՏՆԻՇՅԱՆ Հակոբ Ահարոնի (ծ. 1941), քիմիկոս: Քիմ. գիտ. դ–ր (1976), պրոֆ. (1981): Աշխ–ները վերաբերում են ջերմակայուն բազմազուգորդված պոլիմերների, օրգ. կիսահաղորդիչների ու ռազմ. նշանակության հատուկ նյութերի սինթեզին, կառուցվածքին և հատկություններին, առաջացման մեխանիզմների բացահայտմանը:

ՄԱՏՆՈՑԱՆԿ (Digitalis), խլածաղկազգիների ընտանիքի բազմամյա, հազվադեպ՝ միամյա կամ երկամյա խոտաբույսերի, հազվադեպ՝ կիսաթփերի ցեղ: Հայտնի է 35 տեսակ, ՀՀ–ում՝ 2՝ գրեթե բոլոր մարզերում: Պարունակում է (հիմնականում՝ տերևները) գլիկոզիդներ: Որոշ տեսակներ ածեցվում են որպես արժեքավոր դեղաբույսեր և գեղազարդիչ: Թունավոր է:

ՄԱՏՆՈՒԿՆԻ (Potentilla), **արծաթախոտ, ինգամատնեն**, վարդազգիների (վարդածաղիկներ) ընտանիքի բազմամյա, հազվադեպ՝ միամյա կամ երկամյա խոտաբույսերի կամ կիսաթփերի ցեղ: Հայտնի է 300 (500) տեսակ, ՀՀ–ում՝ 29՝ բոլոր մարզերում: Այսրկովկասի ծիրանավորը ընաշխարհիկ է, աճում է միայն Գեղամա լ–շղթայում: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՄԱՏՈՍԿԵՐ, **ֆալանգներ** (հուն.՝ falanx – հոդ), մանր խողովակավոր ոսկրեր, որոնք ձևավորում են ցամաք. ողնաշարավորների և մարդու մատների կմախքը:

ՄԱՏՈՒՐԻՆ Վլադիմիր Անատոլևիչ (ծ. 1948), ռուս երգիչ (բաս): ՌԴ ժող. ար–

տիստ (1997): 1977–ից՝ Մոսկվայի Կ. Ս. Ստանիսլավսկու և Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոյի անվ. երաժշտ. թատրոնի, 1991–ից՝ Մեծ թատրոնի մեներգիչ (Բորիս Գոդունով՝ Մ. Պ. Մուսորգսկու «Բորիս Գոդունով», ևն): Երաժիշտ-կատարողների միջազգ. (1973, Ժնև), մեներգիչների Մ. Ի. Գլինկայի անվ. համամիութ. (1977, Մոսկվա) մրցույթների 2-րդ մրց-ներ: ՌԴ Վաստ-յան մրց. (2015):

ՄԱՏՈՐԻՆՆԵՐ (Մոտորիններ), **Իվան Ֆեոդորովիչ Մ.** (մոտ 1660–1735) և **Միխայիլ Իվանովիչ Մ.** (ծ. թ. անհտ–1750), ռուս ձուլագործներ, թնդանոթի և զանգերի վարպետներ, հայր ու որդի: 1735-ին ձուլել են «Արքա-զանգը»:

ՄԱՏՎԵԵՆԿՈ Ալեքսանդր Մակարովիչ (ծ. 1939), մեքենաշինության բնագավառի ռուս գիտնական: ՌԴԱ ակադ. (2003): Աշխ-ները վերաբերում են աշխ-ի արագացված ռեժիմով թռչող սարքերի տեսությանը և մեթոդներին, նրանց հիդրավլիկ համակարգերի պատրաստման սկզբունքների, այդ թվում նաև թափավազքի ժամանակ ինքնաթիռների արգելակման համակարգերի մշակմանը (Իլ–86, Տու–154, Ան–124): ՌԴ Պետ. մրց. (1999):

ՄԱՏՎԵԵՆԿՈ Վալերի Պավլովիչ (ծ. 1948), ռուս մեխանիկոս: ՌԴԱ ակադ. (2003): Աշխ-ները վերաբերում են դեֆորմացվող մարմինների ամրության, կայունության և տատանումների տեսությանը, պոլիմեր. և բաղադրյալ նյութերի մեխ. հատկությունների ուսումնասիրություններին:

ՌԴ Պետ. մրց. (1999):

ՄԱՏՎԵԵՎ Եվգենի Սեմյոնովիչ (1922–2003), ռուս. դերասան, կինոռեժ.: ԽՍՀՄ արվ. վաստ. գործիչ (1931), ժող. արտիստ (1974): 1952–68-ին՝ Մոսկվայի Փոքր թատրոնի դերասան: Նկարահանվել է «Հարազատ արյուն», «Հերկած խոպան», «Հարություն», «Տուն, որտեղ ապրում եմ ես» և այլ ֆիլմերում: Նկարահանել է «Փոստային սիրավեպ» (1970), «Երկրային սեր» (1975), «Ճակատագիր» (1978), «Առանձնահատուկ հանձնարարություն» (1981), «Սիրել ռուսական ձևով» (1995), «Սիրել ռուսական ձևով 2» (1997), «Սիրել ռուսական ձևով 3: Նահանգապետը» (1999, գլխ. դերում՝ Մ.) և այլ ֆիլմեր:

ՌԽՖՍՀ (1974), ԽՍՀՄ (1979) Պետ. մրց-ներ:

ՄԱՏՎԵԵՎ Վիկտոր Անատոլևիչ (ծ. 1941), ռուս ֆիզիկոս-տեսաբան: ՌԳԱ ակադ. (1994): Աշխ-ները վերաբերում են բարձր էներգիաների ֆիզիկային, տարր. մասնիկների և դաշտի քվանտ. տեսություններին:

Լ.Ենինյան (1988), ՌԴ Պետ. (1998), Վաստ-յան (2000) մրց-ներ:

ՄԱՏՎԵԵՎԱ Նովելլա Նիկոլաևնա (1934–2016), ռուս բանաստեղծուհի, սեփ. երգերի կատարող: Հեղինակ է «Նավակ» (1963), «Իրերի հոգին» (1966), «Ծիծեռնակի դպրոցը» (1973), «Ալեբախության երկիր» (1983), «Մենուետ» (1994), «Սոնետներ» (1998) և այլ քնար. ժող-ների, նաև պատմամշակութ. հուշերի: Թարգմանել է Վ. Շեքսպիրի սոնետները: ՌԴ Պետ. մրց. (2002):

ՄԱՏՏԱ Էչաուրեն (Matta Echaurren) Ռոբերտո Անտոնիո Սեբաստիան (1911–2002), չիլիացի գեղանկարիչ, գրաֆիկ: Սյուրռեալիզմի ներկայացուցիչ: 1939–48-ին՝ Նյու Յորքում: Նպաստել է աբստրակտ էքսպրեսիոնիզմի ձևավորմանը («Սարսափի տարիներ», 1941–42): 1950–70-ական թթ-ի նկարներին բնորոշ են սարկազմը, մռայլ կանխագուշակումները: Հեղինակ է ՅՈՒՆԵՍԿՕ-ի շենքի որմնանկարների (1956, Փարիզ):

ՄԱՏՏԵՈՒ (Matthes) Ռոլանդ (ծ. 1950), գերմանացի մարզիկ (լող՝ մեջքի վրա): Օլիմպ. խաղերի քառակի (1968, 1972), աշխարհի (1977) և Եվրոպայի (1970, 1974) չեմպիոն: Աշխարհի բազմակի ռեկորդակիր:

ՄԱՏՐԻՑ (գերմ.՝ Matrize, < լատ. motrix – աղբյուր, սկիզբ), որոշակի a_{ik} տարրերի (թվեր, մաթ. արտահայտություններ) ուղղանկյուն աղյուսակ, որը կազմված է m տողից և n սյունակից՝

$$\begin{Vmatrix} a_{11} & a_{12} & \dots & a_{1n} \\ a_{21} & a_{22} & \dots & a_{2n} \\ \dots & \dots & \dots & \dots \\ a_{m1} & a_{m2} & \dots & a_{mn} \end{Vmatrix} = \|a_{ik}\|:$$

Եթե m = n, ապա Մ. կոչվում է **քառակուսի Մ.**: Մ-ով կատարում են գործողություններ՝ ***մատրիցային հանրահաշվի*** կանոններով: Մ. օգտագործում են մաթ-ի և ֆիզիկայի մի շարք բաժիններում, մասնավորապես՝ n անհայտներով m գծային հավասարումների համակարգի հետազոտման համար:

ՄԱՏՐԻՅԱՅԻՆ ՀԱՆՐԱՀԱՇԻՎ, հանրահաշվի՝ մատրիցներով գործողությունների կատարման բաժին: $\|a_{ik}\|$ բազմապատկած a թվով՝ ստացվում է $\|aa_{ik}\|$ մատրիցը: $\|a_{ik}\|$ և $\|b_{ik}\|$ մատրիցների գումարը հավասար է $\|a_{ik} + b_{ik}\|$: $\|a_{ik}\|$ կարելի է բազմապատկել $\|b_{ik}\|$-ով, եթե միայն առաջին բազմապատկչի սյունակի թիվը հավասար է 2-րդի տողերի թվին: Այդ մատրիցների AB = C արտադրյալը կլինի $\|a_{ik}\|$ մատրիցը՝ $c_{i1} = a_{i1}b_{1i} + a_{i2}b_{21} + \dots + a_{ik}b_{ki}$ տարրերով:

ՄԱՏՐԻՔՍ (լատ.՝ matrix, < mater – հիմք, բառացի՝ մայր), բջջապլազմայի և ներբջջ. կառուցվածքները (կորիզ, միտոքոնդրիաներ, պլաստիդներ և այլ օրգանոիդներ) և նրանց միջև տարածությունները լցնող մանրահատիկ կիսահեղուկ միատարր նյութ:

ՄԱՏՐՈՍՈՎ Վլադիմիր Մեֆոդևիչ (1932–2011), կառավարման համակարգերի բնագավառի ռուս գիտնական: ՌԳԱ ակադ. (1987): Աշխ-ները վերաբերում են տես. մեխանիկային, ոչ գծային և բարդ համակարգերի դինամիկային: ԽՍՀՄ Պետ. մրց. (1984):

ՄԱՏՈՒԼԻՍ (Matulis) Յուոզաս Յուոզովիչ (1899–1993), լիտվացի ֆիզքիմիկոս: Լիտվայի ԳԱ ակադ. (1941, նախագահ՝ 1946–84-ին), ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1946): Սոց. աշխ. հերոս (1965): Աշխ-ները վերաբերում են մետաղների լուսաքիմիային, էլեկտրաքիմիային և էլեկտրանստեցմանը:

ՄԱՏՈՒՌ, վաղ միջնադարում՝ վկայարան, փոքր եկեղեցի, աղոթատեղի՝ կառուցված վկայի՝ նահատակի գերեզմանի (կամ մասունքների) վրա, նաև նրա հիշատակին: Մ-ներն արտաքուստ խաչաձև, կլոր, բազմանիստ կամ ուղղանկյուն, գմբեթավոր (կամ թաղածածկ), բեմով (կամ առանց դրա) կառույցներ են: Միջնադար. Հայաստանում Մ-ի (մեծ մասամբ՝ նաև ***Թուխ Մանուկ*** կոչվող) տարածված ձևը թաղածածկ դահլիճն է՝ արլ-ում կիսաշրջանաձև կամ ուղղանկյուն խորանով:

ՄԱՏՈՒՍՈՎՄԻ Միխայիլ Լվովիչ (1915–1990), ռուս բանաստեղծ: Հեղինակ է «Մերձմոսկովյան երեկոներ», «Դպրոցական վալս» քնար. երգերի տեքստերի, «Չմոռանաս» (1964), «Էություն» (1979) բանաստեղծությունների ու պոեմների ժող-ների, «Ընտանեկան ալբոմ» (1978–1979) հուշագրության և այլ գործերի: Հայ. հրատարակվել է «Տողեր թեժ թոնրից» (1988) բանաստեղծությունների ժող-ը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1977):

ՄԱՏՈՒՏԱԿ (Glycyrrhiza), **քաղցրամատ, մանակ**, բակլազգիների ընտանիքի բազմամյա կոճղարմատավոր խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 15 տեսակ, ՀՀ-ում՝ 2՝ Շիրակի, Արարատի, Սյունիքի մարզերում, Երևանի շրջակայքում: Մ-ի խոզանավոր տեսակը հանդիպում է միայն Արարատ. գոգավորությունում և գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՄԱՏՈՒՏԵ (Matute) Անա Մարիա (1926–2014), իսպանացի գրող: Հեղինակ է «Ավելի» (1948), «Մեռած որդիներ» (1958) հոգեբ. վեպերի, «Վաճառականներ» (1960–69) եռերգության, «Աշտարակի ժամացույցը» (1971) պատմավեպի, «Մոռացված թագավոր Գուդուն» (1996) այլաբան. դյուցազներգության, նաև մանկ. գրքերի:

«Միգել դե Սերվանտես» մրց. (2010):

ՄԱՐ Ա.ԲԱՄ ԿԱՏԻՆԱ, **Մարաբա Մծուրնացի**, ասորի պատմագիր: Ըստ ***Մովսես Խորենացու***՝ Հայոց թագավոր ***Վաղարշակի*** (մ. թ. ա. II դ.) ժամանակակիցը, որի պատվերով գրել է Հայոց հնագույն ժամանակաշրջանի պատմությունը: Մ. Ա. Կ-ի «Նախնյաց պատմությունը» քաղվածաբար օգտագործել են Մովսես Խորենացին և Անանուն պատմիչը (IV դ.):

ՄԱՐ ԴԵԼ ՊԼԱՏԱ (Mar del Plata), ք-ևմնգստ, կլիմ. առողջավայր Արգենտինայում: Բն.՝ 593 հգ. (2010): Զբոսաշրջության կենտրոն է:

ՄԱՐԲԱԲՈՒ (Leptoptilus), արագիլների ընտանիքի թռչունների սեռ: Բարձր.՝ 110–150 *սմ*, թևերի բացվածքը՝ մինչև 3 *մ*, կ. զ.՝ 5–6 *կգ*: Հայտնի է 3 տեսակ՝ աֆրիկ., ինդ. և ճավայական Մ-ներ: Փետրազուրկ գլխով և հսկայական կտուցով, խոշոր, ծանրամարմին թռչուններ են: Ապրում են ջրամբարների կամ ճահիճների մոտ: Մսվում են հիմնականում լեշերով:

ՄԱՐԱԴՈՆԱ (Maradona) Դիեգո Արմանդո (ծ. 1960), արգենտինացի մարզիկ (ֆուտբոլ): «Բոկա Խունիորս» (Բուենոս Այրես, 1981–82), «Բարսելոնա» (1982–83), «Նապոլի» (Նեապոլ, 1984–91) թիմերի հարձակվող: Աշխարհի (1986), Արգենտինայի (1981), Իտալիայի (1987 և 1990) չեմպիոն: ՈՒԵՖԱ-ի գավաթի հաղթող (1989): 1980-ական թթ-ի կեսերին՝ աշխարհի լավագույն ֆուտբոլիստներից: Արգենտինայի հավաքականի գլխ. մարզիչ (2008–10):

ՄԱՐԱԹԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, մարաթի ժողգ-ների գրկ-ը (Հվ-արմ. Հնդկաստան, Մահարաշտրա նահգ)՝ ***մարաթի*** լեզվով: Սկզբնավորվել է XI–XII դդ-ում՝ կապված կրոնաբարենորոգչ. շարժումների հետ, որոնց գաղափարախոսները հրաժարվել են սանսկրիտից և դիմել ժող. կենդանի լեզուներին: Խոշորագույն ներկայացուցիչներն են բանաստեղծներ Մուկունդարաջան (1128–1198), Նամդևը (1270–1350), Դնյաննեշվարը (1271–1296), Էկնաթը (1533–1599), ***Թուքարամը*** (1608–1649), Ռամադասը (1608–1681) և ուր.: XIX դ-ի 1-ին կեսին (անգլ. գաղութատիրության ժամանակ) առաջատար են դարձել սոցիալ. և

պատմ. թեմաներով վեպը, կենցաղ., քաղ. դրաման, XIX դ–ի վերջին՝ պատմվածքի ժանրը, քաղ. պոեզիան (Վ. Բրահմաչարի, Զ. Փուլե, Հ. Ահարքար, Հ. Ապտե, Ն. Գուպտե, Գ. Դևալի, Կ. Քաղիլքարի): 1940–ական թթ–ի ազգ–ազատագր. շարժումը նպաստել է ռեալիստ. արձակի (Մ. Դեշպանդե, Ն. Փաղկե, Վ. Քանդեքար և ուր.), հեղ. պոեզիայի (Ա. Դեշպանդե, Վ. Շիրվաղքար, Վ. Կանտ և ուր.) զարգացմանը: Անկախ Հնդկաստանի Մ. գ–յանը բնորոշ են տարբեր ոճերի և ուղղությունների միահյուսումը (Շ. Պենդսե, Վ. Մուդգուլքար, Զ. Դալվի, Շ. Մուքթիբոդհ, Վ. Բապատ, Պ. Դեշպանդե և ուր.):

ՄԱՐԱԹԻ, Մահարաշտրա նահանգ–ի (Հնդկաստան) պաշտոն. լեզուն, Հնդկաստանի գր. լեզուներից: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի հնդիրան. ճյուղին: Գրի հիմքում դևանագարին է, օգտագործվում է նաև նրա մոդի արագագիր տարբերակը:

ՄԱՐԱԹՈՆ, բնակավայր Հունաստանում՝ Ատտիկայի համանուն հարթավայրում՝ Աթենքից 40 *կմ* հս–արլ.: Մ–ի մոտ մ. թ. ա. 490–ի սեպտ. 13–ին տեղի է ունեցել հույն–պարսկ. պատերազմների առաջին խոշոր ճակատամարտը: Հուն. զորքը (շուրջ 10 հզ. հոպլիտներ՝ ծանրազեն հետևակը) Միլտիադեսի հրամանատարությամբ պարտության է մատնել Դատիսի գլխավորած պարսկ. զորքին (մոտ 20 հզ. նետաձիգներ ու հեծելազորայիններ):

ՄԱՐԱԹՈՆՅԱՆ ՎԱՋՔ, օլիմպ. խաղերի ծրագրի (1896–ից) և այլ պաշտոն. մրցությունների վազքի ամենաերկար տարածությունը՝ 42 *կմ* 195 *մ*: Անվանումն ստացել է ***Մարաթոն*** հուն. բնակատեղիի անունից, որտեղից, ըստ ավանդության, հույն սուրհանդակ զինվորը վազքով (40 *կմ*) հասել է Աթենք՝ ավետելով պարսիկների նկատմամբ հույների հաղթանակի լուրը և անկենդան ընկել (մ. թ. ա. 490):

ՄԱՐԱԼ, եղջերուների ընտանիքի երկկճղակավոր կենդանի: Գոյություն ունեն ազնիվ եղջերուի 2 աշխարհագր. ռասաներ՝ ալթայան և տյանշանյան Մ–ներ: Բազմացնում են բուծարաններում՝ պանտեր ստանալու համար, որոնցից պատրաստում են բուժիչ պատրաստուկ (պանտոկրին):

ՄԱՐԱԼԻ ԱՐՄԱՏ, **լևզեա սաֆլորանման**, աստղածաղկազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույս: Աճում է հիմնականում Սիբիրում (1700–2000 *մ* բարձր–յան վրա): Մարալների արոտային կեր է (այստեղից՝ անվանումը): Աճեցնում են որպես դեղաբույս (ունի ընդհ. տոնուսավորող ազդեցություն):

ՄԱՐԱՀ ՌՈՒՍԼԻ (Marah Rusli, 1889–1968), ինդոնեզացի գրող: Հեղինակ է «Սիտի Նուրբայա» (1922) վեպի, «Լա Խամի» (1952) պատմավեպի:

ՄԱՐԱՂԱ, **Մերաղե, Մարակա**, ք. Իրանի հս–արմ–ում: Բն.՝ 162, 275 հզ. (2011): Հիշատակվում է արաբ. աղբյուրներում. հայտնի է ***Մարաղայի աստղադիտարանով***: Հայկ. համայնքի մասին հիշատակություններ կան սկսած XIII դ–ից: XIV դ–ում Մ. եղել է հայ ***ունիթորների*** կենտրոն: XVII դ–ում հայկ. համայնքի մասին գրել է Ջաքարիա Ագուլեցին: 1828–29–ին և 1946–ին Մ–ից և շրջակա գյուղերից հազարավոր հայեր ներգաղթել են Արլ. Հայաստան: Մ–ում ապրում է (1997) մի քանի հարյուր հայ: Մ–ից ոչ հեռու Ֆեյրավա (Ֆիրաբադ) գ–ի մոտ պահպանվել է հայկ. եկեղեցի:

ՄԱՐԱՂԱՅԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ, հիմնադրվել է XIII դ–ի 2–րդ կեսին Իրանի Մարաղա ք–ում: Գործել է շուրջ 100 տարի: Ունեցել է հարուստ գրադարան (շուրջ 40 000 ձեռագիր): ***Նասրեդդին Թուսիի*** ղեկավարությամբ այստեղ թարգմանել կամ մեկնաբանել են հուն. աստղագիտյունն ու հարակից գիտ–յուններին վերաբերող կարևորագույն երկեր (Էվկլիդեսի, Արքիմեդի, Պտղոմեոսի և ուր.), գրել աստղագիտ. և երկրչփ. աշխ–ներ, կազմել են մոլորակների շարժման ու աստղերի դիրքերի ցուցակներ: Հրատարակվել են 256 քաղաքների աշխարհագր. կոորդինատները և եռանկյունաչափ. ֆունկցիաների վեցանիշ աղյուսակներ, մեծ ճշգրտությամբ (1″) որոշվել է տարեկան ***պրեցեսիայի*** մեծությունը:

ՄԱՐԱՂԱՅԻ ԲԱՐԲԱՌ, հայ–ի «ել» ճյուղի բարբառ: Խոսվել է Մարաղա ք–ում և նրա շրջակայքում: Ունի երկաստիճան ձայնեղազուրկ (պ–փ) բաղաձայն. համակարգ:

ՄԱՐԱՂԱՅԻ ԵՂԵՌՆԱԴՈՐԾՈՒԹՅՈՒՆ 1992, կազմակերպել է ադրբ. բանակը ապրիլի 10–ին (շարունակվել է մայիսի 10–ին) ԼՂՀ Մարտակերտի շրջանի Մարաղա և Մարգուշավան (Լենինավան) գ–երում: Հրկիզել ու ավերել են Մարաղա գ–ը, սպանել 57 և պատանդ վերցրել 53 խաղաղ բնակիչների: Մայիսի 10–ին կրկին ներխուժել են Մարաղա, ապա՝ Մարգուշավան գ–երը, պատանդել 13 բնակչի: Համայնքի 4644 բնակչից 300–ը հիմնադրել են Նոր Մարաղա գ–ը, իսկ հիմն. մասը տեղափոխվել է ՀՀ և ԱՊՀ երկրներ:

ՄԱՐԱՆ (Maran) Ռենե (1887–1960), մարտինիկացի ֆրանսիագիր գրող: Հեղինակ է «Երջանկության տունը» (1909), «Ներքին կյանք» (1912) և այլ բանաստեղծությունների ժող–ների, «Բատուալա» (1921), «Մարդ՝ բոլորի նման» (1947) վեպերի, «Ջուման՝ ջունգլիների շունը» (1927) վիպակի, «Միապետության պիոներները» (հ. 1, 2, 1943, 1946) պատմագիտ. աշխ–յան, «Հուշերի գրքի» (1958), նաև էսսեների:

Գոնկուրյան (1921), Ֆրանսիայի ակադ–ի գր. մեծ (1942) մրց–ներ:

ՄԱՐԱՆԴ, ք., ***Վասպուրական*** նահանգ–ի Բաքրան գավ–ի կենտրոնը: Հայ Արշակունիների անկումից (428) հետո՝ Ատրպատականի կազմում: Այժմ նույնանուն գյուղ՝ Իրանում:

ՄԱՐԱՆՋՅԱՆ Հենրիկ Սահակի (1926–2011), կինոօպերատոր: ՌԴ արվ. վաստ. գործիչ (1976): 1951–ից՝ Լենֆիլմի օպերատոր («Երջանկության օրը», 1963, «Սալյուտ, Մարիա», 1970, «Ռաֆերտի», 1980, «Էվիքսիր», 1995, բոլորը՝ գեղ. ֆիլմ, «Անյուտա», 1982, «Չապլինիանա», 1985, երկուսն էլ՝ ֆիլմ–բալետ):

Համամիութ. կփ (1966, Մոսկվա) դափնեկիր, ՌԽՖՍՀ Պետ. (1984), միջազգ. կփ «Արծաթե առյուծ» (2002, Վենետիկ) մրց–ներ:

ՄԱՐԱՆՋՅԱՆ Հրանտ Բարկենի (ծ. 1939), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (2001), պրոֆ. (2001): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2010): Աշխ–ները վերաբերում են հավանականային ինքնաշխատ սարքերին, ալգորիթմների, հատկապես՝ կոլմոգորովի բարդության տեսությանը: ՌԲՆԳԱ անդամ (1999):

ՄԱՐԱՇ, **Գերմանիկե**, ք. Կիլիկյան Հայաստանում՝ նախկին Հալեպի նահանգում (այժմ՝ Թուրքիայի Մարաշի նահանգ–ի վարչ. կենտրոնը)՝ Զահան գետի ձախ ափին: Եղել է ***Փիլարտոս Վարաժնունու*** ստեղծած հայկ. իշխանության կենտրոնը: XII դ–ի սկզբներին քաղաքի կառավարիչն էր Թաթուլ իշխանը: Լևոն Բ–ի (1187–1219) օրոք Մ. միացվել է Կիլիկիայի հայկ. պետությանը: XVI դ–ից անցել է օսմ. թուրքերին: XVII դ–ում հիմնադրվել է այժմյան Մ. (հին Մ–ից մոտ 18 *կմ* արմ.): 1914–ին ունեցել է 70 հզ. բնակիչ, որոնցից 40 հզ–ը՝ հայեր: 1920–ի փետր–ին ֆրանս. զորքերի նահանջից հետո հայերը վերջնականապես հեռացել են իրենց բնօրրանից:

«ՄԱՐԱՇ», ազգ., կրթ., մշակութ. տեղեկատու պարբերաթերթ (1955–66, Բուենոս Այրես՝ հայ. և իսպ.): Խմբ.՝ Սուսաննա Չալյան:

ՄԱՐԱՇԻ ԲԱՐԲԱՌ, հայ–ի «կա» ճյուղի բարբառ (մեռած): Խոսվել է Մարաշում և շրջակա հայաբնակ գյուղերում: Ունի երկաստիճան խլազուրկ (բ–փ) բաղաձայն. համակարգ:

ՄԱՐԱՇԻ ՀԱՅԲՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, մարաշցի հայերի հայրենակց. կազմ–յուն: Առաջին հայրենակց. միությունը՝ Մարաշի կրթասիրաց ընկ–ը, հիմնադրվել է 1906–ին Նյու Յորքում, 1918–ին՝ Մարաշի նպաստամատույց ընկ., 1925–ին միավորվել է 1912–ին Բոստոնում ստեղծված Մարաշի կրթասիրաց ընկերակցության հետ՝ կազմելով Մ. հ. մ.: Ունի մասնաճյուղեր: Կենտր. վարչությունը՝ Ուստր ք–ում (ԱՄՆ): Մ. հ. մ–յան նախաձեռնությամբ հիմնադրվել է Երևանի Նոր Մարաշ թաղամասը:

ՄԱՐԱՇԻ ՃԵՄԱՐԱՆ (ակադեմիա), հիմնադրվել է 1891–ին Թուրքիայի Մարաշ ք–ում՝ միսիոներ Թովմաս Դեյվիդսոն Քրիստի նախաձեռնությամբ և ավետրան. եկեղեցու նյութ. աջակցությամբ: Պատրաստել է ուսանողներ Թուրքիո Կեդրոն. քոլեջի (Այնթափ) 1–ին կարգի համար: 1910–ին միացվել է Ազգ. կեդրոն. վարժարանին (հիմնադրվել է 1880–ին) և կոչվել Միացյալ կեդրոն. վարժարան: Փակվել է 1915–ին:

ՄԱՐԱՇԼՅԱՆ Լևոն Ստեփանի (ծ. 1948), պատմաբան: Կալիֆոռնիայի համալսարանի դ–ր (1992): «Քաղաքականությունը և դեմոգրաֆիան. հայերը, թուրքերը և քրդերը Օսմանյան կայսրությունում» (անգլ., 1991) աշխ–յան մեջ փաստում է, որ ԱՀՊ նախօրեին Օսմ. կայսրությունում ապրել են 2 մլն–ից ոչ պակաս հայեր:

ՄԱՐԱՋԱԽՍ, **մարաճախտ** (միջին լատ.՝ marescaleus, ֆրանս.՝ marechal անունից), բանակի սպառազինման և պարենավորման գծով ***գունդապարքի*** (սպարապետ) տեղակալը Կիլիկիայի պետությունում: Արևմտահայ–ում օգտագործվում է որպես ***մարշալի*** հոմանիշ:

ՄԱՐԱՍՏԱՆ, **Մեդիա**, հնագույն պետություն Իրան. բարձրավանդակի հս–արմ–ում: Ըստ ***Հերոդոտոսի***՝ Մ–ի թագավորությունը և նրա մայրաքաղաք ***Եկբատանը*** հիմնադրել է Դեովկես (Դեյոկես) թագավորը (մ. թ. ա. մոտ 727–675, այլ տվյալներով՝ 709–656), ըստ ասորեստանյան աղբյուրների՝ ստեղծվել է մ. թ. ա. 670–ական թթ–ին: Հզորության գագաթնակետին է հասել ***Կիաքսարի*** օրոք: Հաջորդի և որդու՝ Աստիագեսի (Աժդահակ, մ. թ. ա. 585–550) դեմ ապստամբել է ***Երվանդ Ա Սակավակյացը***: Կյուրոս II–ը տապալել է Աստիագեսին, հիմնադրել ***Աքեմենյան պետությունը***: Մ. թ. ա. IV դ–ի վերջին քաոորդին նախկին Մ–ի հս–արմ. մասում մարերն ստեղծել են նոր պետություն՝

Ատրպատականը, որը հետագայում կոչվել է Փոքր Մ.:

ՄԱՐԱՏ (Marat) Ժան Պոլ (1743–1793), Ֆրանսիայի հեղ. Յակոբինյանների առաջնորդներից: 1789-ի սեպտ-ից հրատարակել է *«Ժողովրդի բարեկամ»* թերթը: Մ. *Ռոբեսպիերի* հետ ղեկավարել է ժող. ապստամբության (1793) նախապատրաստման աշխ-ները, *ժիրոնդիստներից* խլել իշխանությունը: Մ-ին սպանել է հանրապետ. Շառլոտ Կորդեն՝ այդ կերպ փորձելով դադարեցնել քաղաքաց. պատերազմը Ֆրանսիայում:

ՄԱՐԲՈՒՐԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՖԻԼԻՊԻ ԱՆՎԱՆ, Գերմանիայի հնագույն համալսարաններից: Հիմնադրել է լանդգրաֆ Ֆիլիպ Մեծահոգին 1527-ին: 2015-ին ուներ ավելի քան 21 հզ. ուսանող:

ՄԱՐԲՈՒՐԳՅԱՆ ԴՊՐՈՑ, XIX դ-ի վերջ–XX դ-ի սկզբի ուղղություն նորկանտականության մեջ: Նշանավոր ներկայացուցիչներից էին Մարբուրգի համալսարանի (Գերմանիա) պրոֆ-ներ Հ. *Կոհենը* և Պ. *Նատորպը*, նաև Է. *Կասիրերն* ու Ն. *Հարթմանը*: Մ. դ-ի փիլ-յան հիմն. խնդիրը գիտ-յան մեթոդների և կատեգորիաների վերլուծությունն է: Ապրիորիզմի դիրքերից պնդել է, որ գիտ. իմացության օբյեկտը կառուցվում է տրամար. ձևերով: Մ. դ-ի ներկայացուցիչներն առաջադրել են բարոյագիտ. սոցիալիզմի հայեցակարգը:

ՄԱՐԳԱԳԵՏՆԱՅԻՆ ԹԻԹԵՌՆԻԿ (Colias hyale), հրաթիթեռների ընտանիքի թիթեռ: Գղտ. և վայրաճ բազմաթիվ մշակաբույսերի վնասատու է: Առջևի թևերը գորշդարչնագույն են, հետինները՝ գորշ մոխրագույն: Թրթուրները սնվում են բույսերի վերգետնյա մասերով:

ՄԱՐԳԱԳԵՏՆԱՅԻՆ ԾԻԾԱՌԱԿՏԱՅԱՐ (Glareola patincola), ծիծառակտցարների ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող: Մարմնի երկ.՝ 25, թևերի բացվածքը՝ 60–65 *սմ*, կ. զ.՝ 88–105 *գ*: Կտուցը փոքր է, թևերը՝ երկար, պոչը՝ սկրատաձև: Ապրում է ջրին մոտ, սակայն հազվադեպ է ջուրը մտնում: Թռչում է մեծ բարձրություններում: Սնվում է անողնաշարներով:

ՄԱՐԳԱԳԵՏՆԱՅԻՆ ԿՈՃՂԱՍՈՒՆԿ (Marasmius oreades), ագարիկայինների կարգի թիթեղավոր սունկ: Պտղամարմինը կաշեկերպ է՝ տափակ գլխարկով: Աճում է մարգագետիններում՝ հաճախ առաջացնելով «կախարդի օղակներ»: Ուտելի է:

ՄԱՐԳԱԳԵՏՆԱՅԻՆ ՁԻԱԹՌՉՆԱԿ (Anthus pratensis), *հաղտրտնիկների* ընտանիքի թռչուն: Բնադրող-չվող է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 14,5, թևերի բացվածքը՝ 22–25 *սմ*, կ. զ.՝ 20–25 *գ*: Ապրում է ենթալպ. մարգագետիններում, իսկ չուի ընթացքում՝ ամենուր: Սնվում է անողնաշարներով, սերմերով:

ՄԱՐԳԱԳԵՏՆԱՅԻՆ ՄԿՆԱՃՈՒՌԱԿ (Circus pigargus), *ճուռակների* ընտանիքի գիշատիչ թռչուն: Մարմնի երկ.՝ 43–47, թևերի բացվածքը՝ 105–120 *սմ*, կ. զ.՝ 300–600 *գ*: Սահասավառնում է՝ թևերը կիսաբաց վեր պարզած: Տարածված է խոնավ տարածքներում, ՀՀ հս. լ-տափաստաններում, Արարատյան դաշտում՝ գերազանցապես՝ գարնանը: Սնվում է մանր կրծողներով, թռչուններով, սողուններով:

ՄԱՐԳԱԳԵՏՆԱՅԻՆ ՄՈՂԵՍ (Lacerta praticola), իսկական մողեսների ընտանիքի մողես: ՀՀ-ում հանդիպում է Գեղարքունիքի, Լոռու և Տավուշի մարզերում: Մարմնի երկ-յունը տարիքի հետ փոխվում է (2,7–6,5 *սմ*), պոչը գրեթե կրկնակի երկար է: Ապրում է հիմնականում անտառ. ու մարգագետն. բուսականությամբ, ոչ շատ քարքարոտ վայրերում: Սնվում է մանր անողնաշարներով:

ՄԱՐԳԱՐ (Ավետիսյան Սարգար Մկրտչի, 1880–1944), գրող: Հեղինակ է «Երախտիք» (1904), «Վէպիկներ» (1913), «Զորանոցում» (1934), «Չալիկ» (1936) պատմվածքների, հուշերի, վիպակների ժող-ների, «Հրեղեն ալիքներ» (հ. 1, 1934) պատմահեղ. վեպի: 1937-ին անհիմն բռնադատվել է, 1943-ին՝ արդարացվել:

ՄԱՐԳԱՐ ՎԱՐԺԱՊԵՏ (Ամիրյան Մարգար, 1858–1893), ազգ-ազատագր. պայքարի մարտիկ, ֆիդայի: Հայրենի Վարդենիս գ-ում (Մուշի գվո) հիմնադրել է դպրոց: 1880-ական թթ-ին գլխավորել է վարդենիսցիների ինքնապաշտպ-յունը թուրք-քրդ. ուժերի դեմ: 1892-ին թուրք ոստիկանապետի սպանության կեղծ մեղադրանքով ձերբակալվել ու բանտարկվել է, 1 տարի անց՝ կախաղան բարձրացվել:

ՄԱՐԳԱՐԵ, XIII դ-ի մանրանկարիչ: 1211-ին ծաղկել է «Հաղպատի Ավետարանը» (Մտնդ., ձեռ. № 6288): Ձեռագրի բարձրարվ. խորաններն ու «Քրիստոսի մուտքը Երուսաղեմ» տերուն. նկարը պատկերված են բուս. և կենդ. աշխարհի թավշերանգ գույներով:

ՄԱՐԳԱՐԵ, XIV դ-ի մանրանկարիչ: Ստեղծագործել է հավանաբար Սյունիքի գրչության կենտրոններից մեկում: Հայտնի է Մ-ի նկարազարդած 1 Ավետարան (Մտնդ., ձեռ. № 2930)՝ ընդօրինակված 1315-ին: Ոճով և պատկերագրությամբ Մ-ի մանրանկարներին բնորոշ է արխաիզմը, որը մասամբ առնչվում է տեղ. և ասորա-ղպտ. գեղանկարչության ավանդույթների հետ:

ՄԱՐԳԱՐԵ ԱՐՃԻՇԵՑԻ, XVI դ-ի 1-ին կեսի գրիչ: Աշակերտել է *Գրիգորիս Աղթամարցուն*, որի պատվերով 1534-ին ընդօրինակել է Սաղմոսարան, Ճառընտիր, նրա համագործակցությամբ կազմել Ալեքսանդր Մակեդոնացու պատմության 2 մատյան՝ 1526-ին Խառաբաստա վանքում (Վնտ. մտնդ., Հ. Քյուրտյանի ֆոնդ, ձեռ. № 280) և 1536-ին Վարագավանքում (Երուսաղեմի մտնդ., ձեռ. № 473):

ՄԱՐԳԱՐԵՆԵՐ (պիլ.՝ margar, զենդ.՝ madran – կանխասաց), **կանխագուշակ**, Աստծու ուղերձն ըմբռնելու շնորհով օժտված անհատներ՝ տեսանողներ համաշխ. կրոններում: Մ. միջնորդի դեր են կատարում Նրա և մարդկանց միջև, միաժամանակ նաև Աստծու անունից կանխատեսումներ են կատարել ապագայի (երաշտ, սով ևն), կրոն. և պատմ. իրադարձությունների, ինչպես նաև անհատների ճակատագրերի վերաբերյալ: Հին Արևելքում եղել են մեծաթիվ Մ.: Հուդայականության մեջ հայտնի են հին, վաղ շրջանի (Միվսես և ուր.) և ուշ շրջանի Մ.: Աստվածաշնչում առանձին խումբ են կազմում այն Մ., որոնց անունով հայտնի են մարգարեություններ (Եսայու, Ովսեի, Ամովսի, Հովելի ևն):

ՄԱՐԳԱՐԻՏ, 1. որոշ փափկամարմիններում զարգացող գնդաձև կամ անկանոն գոյացություն: Թանկարժեք քար է: Կազմված է հիմնականում կալցիումի կարբոնատից: Առաջանում է խեցու մեջ կողմնակի իր (ավազահատիկ ևն) ընկնելու դեպքում, երբ նրա շուրջը կուտակվում է սադափիր: Ծով. Մ. արդյունահանվում է Կարմիր ծովում, Պարսից ծոցում, Շրի Լանկայի, Ավստրալիայի, Ճապոնիայի, Վենեսուելայի մերձափնյա տարածքներում: XX դ-ից աճեցվում է արհեստ. Մ. (հիմնականում՝ Ճապոնիայում): Կիրառվում է ոսկերչ. գործում՝ որպես թանկարժեք քար: 2. Փխրուն փայլատների խմբի միներալ ($Ca[Al_2(OHF)_2\,[AlSiO_5)_2]$ (OH,F_2): Խառնուրդները՝ Na և Li, Fe^{3+}, Be ևն: Կարծր.՝ 3,5–4,5, խտ.՝ 3,0 *գ/սմ*^{3}:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Ալբերտ Յախշիբեկի (ծ. 1939), հիդրավլիկայի ընագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (2009), պրոֆ. (2014): Աշխ-ները վերաբերում են հեղուկի ոչ ստացիոնար շարժմանը, հիդրավլիկ հարվածին, պոմպերին և պոմպակայաններին, հիդրոտուրբիններին և ջրէկներին, խողովակաշարերի պաշտպ-յանը, կենսագազի տեղակայանքների նախագծմանը, կառուցմանն ու շահագործմանը:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Ալեքսանդր Սիմոնի (1924–2001), լեզվաբան, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1967), պրոֆ. (1969): Շիրազ *Մարգարյանի* հայրը: Հեղինակ է «Արդի հայերենի կապերը» (1955), «Խաչատուր Աբովյանը և աշխարհաբարը» (1958), «Գորիսի բարբառը» (1975), «Հայերենի բաղհյուսական բարդությունները» (1986), «Հայոց լեզվի քերականություն. Շևաբանություն» (2004) և այլ աշխ-ների: Կազմել է «Հայերեն դժվար հասկանալի բառերի բացատրական բառարան»-ը (1998), «Օտար բառերի բացատրական բառարան»-ը (համահեղ., 2004), Ղազար Փարպեցու «Հայոց պատմության» համաբարբառը (գիրք 1–3):

ՄԱՐԳԱՐՅԱՆ Անդրանիկ Աղասու (ծ. 1944), բանասեր, գերմանագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1992), պրոֆ. (1995): Հեղինակ է ժամանակակից գերմ-ի հաղորդակց. գործառույթին և արտահայտման կառուցվածքին, գերմ-ի քերակ-յանն ու պատմությանը վերաբերող աշխ-ների:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Անդրանիկ Նահապետի (1951–2007), կուս-քաղ., պետ. գործիչ: 2000–07-ին՝ ՀՀ վարչապետ: 1968-ից՝ Ազգ. միացյալ ընդհատակյա կուս-յան (ԱՄԿ), 1973-ից՝ ԱՄԿ խորհրդի անդամ: 1992-ից՝ ՀՀԿ անդամ, 1997–98 և 2005–07-ին՝ նախագահ: Մասնակցել է Արցախյան գոյամարտին (1991–94):

ՀՀ ՊՆ «Գարեգին Նժդեհ» (2002) հուշամեդալ, ԵԿՄ «Վազգեն Սարգսյան» (2003), ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2006) շքանշաններ, Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2004):

ՄԱՐԳԱՐՅԱՆ Աստղիկ Եփրեմի (1906–1993), պտղաբույծ: Կենսբ. գիտ. դ-ր (1965), պրոֆ. (1962): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (1967): Աշխ-ները վերաբերում են Հայաստանում պտղաբուծության զարգացման, սորտաշրջանացման, խնձորենու նոր սորտերի ստացման, լեռն. և նախալեռն. շրջաններում պտղատու այգիների հիմնման և մշակման հարցերին:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Արամ Հենրիկի (ծ. 1974), ըմբիշ: ԽՍՀՄ (1991), միջազգ. կարգի (1994), ՀՀ (2009) ս. վ. վ.: Եվրոպայի երիտասարդ. առաջնության հաղթող (1994), աշխարհի չեմպիոն (2002, մինչև 60 *կգ* քաշ. կարգում): ՀՕԿ-ի «Հրանտ Շահինյան» մեդալ (2010):

ՄԱՐԳԱՐՅԱՆ Արմեն Ստեփանի (ծ. 1956), ճարտարագետ-մեխանիկոս: Ստեփան

Մարգարյանի որդին: Տեխ. գիտ. դ–ր (2004), պրոֆ. (2005): Աշխ–ները վերաբերում են գաղտ. ճարտարատեխ. համալիր ծառայության և էներգախնայող. տեխ–նոլոգիաների և մեքենաների մշակման հարցերին:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Արշալույս Հակոբի (1914–2008), բանաստեղծուհի: Հեղինակ է «Ձնծաղիկներ» (1947), «Հայրենի հովիտ» (1958), «Երբ սիրում ես» (1970), «Դու ինձ սպասում էիր» (1975), «Արտամետի այգի» (1984), «Փոքրիկ հովիվը» (1989), «Ծաղկած ծիրանի» (1990) և այլ հայրենասիր., քնար., մանկ. բանաստեղծությունների ժող–ների:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Բենիամին Եղիշեի (1915–1985), աստղագետ: Ֆիզմաթ. գիտ. թեկ–նածու (1944): ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1971, թղթ. անդամ՝ 1965–ից): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): Մարո ***Մարգարյան***ի եղբայրը: Վիկտոր Համբարձումյա–նի հետ հաստատել է Գալակտիկայում աստղասփյուռների առկայությունը, հայտնաբերել սպեկտրի ԱՄ տիրույթում ճառագայթման ավելցուկ ունեցող գա–լակտիկաներ, որոնք հետագայում կոչվել են ***Մարգարյանի գալակտիկաներ***: Մի–ջազգ. աստղագիտ. միության «Գալակտի–կաներ» հանձնաժողովի փոխնախագահ (1973–76), նախագահ (1976–79):

ԽՍՀՄ Պետ. մրց. (1950), «Պատվո նշան» (1955) և Ժողդ–ների բարեկամութ–յան (1983) շքանշաններ:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Գաբրիել Մովսեսի (1901–1956), մանկաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1956): Աշխ–ները վերաբերում են երեխաների կալա ազար (լեյշմանիոզ) հիվանդութ–յան ուսումնասիրությանը: Հայաստանում առաջինն է կատարել տրոպիկ. հիվան–դություններով պայմանավորված սա–կավարյունությամբ հիվանդ երեխաների արյան փոխներարկում:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Էդուարդ Աբրեսի (1933–2010), քիմիկոս–օրգանիկ: Քիմ. գիտ. դ–ր (1981), պրոֆ. (1984): Աշխ–ները վերաբե–րում են սիրտանոթ. համակարգի գործու–նեությունը կարգավորող կենսաբանորեն ակտիվ նյութերի, նոր վիրուս. միջոցների սինթեզին և հետազոտմանը: Ստացել է անոթալայնիչ, հականոհթմային, թեր–ճնշումային և այլ հատկություններով օժտված մի շարք արդյունավետ միացութ–յուններ՝ բեղիտին, ֆորսֆոլ, ամիխրոն ևն:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Էդուարդ Սարգսի (1929–2011), փիլ.: Փիլ. գիտ. դ–ր (1968), պրոֆ. (1984): Ռուս. մշակութաբանության հիմ–նադիրներից: Աշխ–ները վերաբերում են մշակութաբանության, ինչպես նաև հա–մաշխ. քաղաքակրթության դինամիկայի համատեքստում հայ ժողդ–ի գոյատևման ու զարգացման խնդիրներին: ՌԴ մշակու–թաբանության ընկ–յան պատվ. անդամ (2006–ից):

ՄԱՐԳԱՐՅԱՆ Թեմուր Գևորգի (ծ. 1935), ճարտարագետ–շինարար: Տեխ. գիտ. դ–ր (2011), պրոֆ. (2014): Աշխ–ները վե–րաբերում են սեյսմակայուն շին–յանը, շին. կառուցվածքների աշխատանքին՝ ուժային ազդեցությունների տակ: Մաս–նակցել է խոշոր կառույցներում և բնա–կելի շենքերում վթարների հետևանքների վերացման միջոցառումների մշակման աշխ–ներին:

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան, ՀՀ վարչապետի հուշամեդալ, ՀՀ ԳԿՆ, քաղաքաշինության նախ–յան ոսկե մե–դալներ:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Լևոն Պարթևի (ծ. 1923), մանկաբարձ–գինեկոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (1976), պրոֆ. (1977): Պարթև ***Մարգար–յանի*** որդին: Աշխ–ները վերաբերում են կանանց օրգանիզմի վրա մասնագիտ. վնասակար գործոնների ազդեցությանը, նաև կանանց սեռ. օրգանների վերար–տադրող. կենսընթացում գլխուղեղի տարբեր բաժինների դերին:

ՀԽՍՀ ԱՆ ծննդօգնության խորհրդի նախագահ (1970–78):

ՄԱՐԳԱՐՅԱՆ Կարինե Սերգեյի (ծ. 1955), քիմիկոս–օրգանիկ: Քիմ. գիտ. դ–ր (2016): Սերժիկ ***Մարգարյան***ի կինը: Աշխ–ները վերաբերում են կենսապոլիմերների էլեկտրասինթեզին, որոնք կիրառվում են սրտի պսակային անոթների՝ նոր սերնդի ստենտների (մասնավորապես՝ կենսա–քայքայվող) ստեղծման և դրանցում դե–ղանյութերի անշարժացման, կուտակման (իմոբիլիզացիա) նպատակով:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Հայկանուշ Իլյիչի (1907–1976), միջատաբան: Բժշկ. գիտ. դ–ր: Աշխ–ները վերաբերում են երեխաների լամբլիոզի ախտածագման, բուժման և կանխարգելման խնդիրներին, Հայաստա–նի տարբեր կլիմայաաշխարհագր. շրջան–ներում ասկարիդոզի տարածվածությանը:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Հայրապետ Գևորգի (ծ. 1950), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1996), պրոֆ. (2003): Հեղինակ է «Հյու–սիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր» (1980), նաև հայոց և վրաց աղբյուրա–գիտ–յանն ու պատմագրությանը վերաբե–րող աշխ–ների: Հրտ–յան է պատրաստել «Մխիթար Անեցի. Մատեան աշխարհա–վէպ հանդիսարանաց» (1983) երկը:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Հենրիկ Ռուբենի (1925–2017), կինոռեժ.: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1967): 1955–ից՝ Հայֆիլմի ռեժ., 1972–ից՝ Կինոդերասանի ժող. ստուդիայի գեղ. ղեկ.: Նկարահանել է «Նվագախմբի տղա–ները» (1960, Հենրիկ ***Մալյանի*** հետ), «Տեր–տերին ուխտը» (1964), «Խաչմերուկի դե–ղատունը» (1987) գեղ., «Եղիշե Չարենց» (1957), «Անհնազանդ սերունդ» (1959) վավերագր. և այլ ֆիլմեր: Բեմադրել է հե–ռուստաներկայացումներ («Գավազանը»՝ ըստ Վ. Քաչայի, 1973, Մ. Մնացականյանի «Նահանջ տարի», 1985, ևն):

ՄԱՐԳԱՐՅԱՆ Հովհաննես Սարգսի (1901–1963), ճարտ.: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1961): ԽՍՀՄ շին–յան և ճարտ–յան ակադ–ի ակադ. (1956): ՀՃՄ վարչության նախագահ (1955–62): Համահեղինակ է Երևանում՝ Հայպետշինի (1928), քիմ. գործարանի բանվ. բնակելի թաղամասի (1932–37), նախկին Կենտր. հանրախա–նութի (1932–37), Հայէներգոյի վարչութ–յան շենքի (1938), գրապալատի համալիրի (1935–40), կոնյակի գործարանի համալի–րի (1952), Ռադիոյի տան (1954), Վանա–ձորում՝ Կենտր. հրապարակի համալիրի (1955–60) և այլ նախագծերի:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Հրանտ Մանուկի (ծ. 1938), դրամատուրգ, ռեժ., բանաստեղծ: Քիմ. գիտ. դ–ր (1971), պրոֆ. (1994): 1967–ից՝ Նյու Յորքի Համազգ. թատերախմբի հիմ–նադիր–ղեկ.: Բեմադրել է իր հեղինակած «Շրջանը» (1975), «Վարդանանք» (1979), «Ուղևորը» (1989), «Հեթում արքայ» (1993), «Հայելիներ» (անգլ., 1996), նաև Լ. Շանթի «Հին աստվածները» և այլ պիեսներ: Հե–ղինակ է «Վազեմ... չուշանամ» («Բագին», 1994), «Ուղևորը» (2004), «Երբ արևը կը լռէ» (2005) պիեսների, «Ենթաեսէն փշրուա–ած» (2004) բանաստեղծությունների, «Քա–րաձայն պատարագ» (անգլ., հայ., 1997) ճամփորդ. հուշագրությունների ժող–ների:

ՀԳՄ «Լավագույն դրամատուրգ» մրց. (1992), Համազգայինի ոսկե (1980), ՄՏԿԿ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (1987) մեդալներ:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Հրանուշ Արայի (1921–2005), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ–ր (1975), պրոֆ. (1978): ՀԽՍՀ բարձրագույն դպրոցի վաստ. գործիչ (1981): Հեղինակ է «Ակնարկ ռուսերենի ձևաբանության՝ հայերենի ձևաբանության զուգադրութ–յամբ» (1987), «Բառային նշանակության տեսակը և քերականական հարացույցը» (1988, երկուսն էլ՝ ռուս.) և այլ աշխ–ների:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Հրաչյա Խաչատուրի (1912–1967), խորհրդ. կուս. և պետ. աշխատող: Եղել է «Խորհրդային Հայաստան» թերթի խմբ. (1939–41, 1952), ՀԿԿ ԿԿ 2–րդ քար–տուղար (1953–59), ՀԽՍՀ մշակույթի նա–խարար (1959–64), ԳԽ նախագահության նախագահի տեղակալ (1964–67):

ՄԱՐԳԱՐՅԱՆ Մարգար Ավետիսի (1894–1941), դուդուկահար: Նվագել է Վարդան ***Բունու*** նվագախմբում, 1926–ից՝ Հայաս–տանի ռադիոյի և հեռուստատեսության (1957–ից) ժող. գործիքների անսամբլում: Երկացանկում՝ հայկ. ժող. և աշուղ. երգե–րի գործիք. փոխադրումներ, մուղամներ: Ստեղծել է դուդուկի տարատեսակ:

Ժող. գործիքների երաժիշտ կատա–րողների համամիութ. ստուգատեսի 3–րդ մրց.:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Մարիամ Մամիկոնի (ծ. 1950), քաղաքագետ: Քաղ. գիտ. դ–ր (2005), պրոֆ. (2011): Աշխ–ները վերաբե–րում են քաղ. ընտրանու գործունեութ–յունը ՀՀ–ի ժողովրդավարության անցման պայմաններում, քաղ. զարգացման և արդիականացման, քաղ. առաջնորդութ–յան հարցերին:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Մարինա Միտուշի (ծ. 1960), ստոմատոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (2006), պրոֆ. (2006): Աշխ–ները վերաբերում են ստոմատոլոգ. հիվանդութ–յունների կանխարգելման և բուժման մեթոդների մշակմանը, ստոմատոլոգ. հիգիենայի խնդիրներին:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Մարո Եղիշեի (1915–1999), բանաստեղծուհի: Բենիամին ***Մարգար–յանի*** քույրը, Անահիտ և Աշոտ ***Բայան–դուրների*** մայրը: Հեղինակ է «Բանաս–տեղծություններ» (1945, 1978, 1984, 2011), «Մոր ձայնը» (1951), «Փշատենի» (1954), «Լիրիկա» (1962), «Լցված լռություն» (1972), «Նվիրումներ» (1982), «Սիրո երգեր» (1984) հայրենասիր., սիրային, մարդկային փոխհարաբերությունների մասին բանաստեղծությունների ժող–նե–րի: ՀԽՍՀ Պետ. մրց. (1983):

ՄԱՐԳԱՐՅԱՆ Շավարշ Սեդրակի (1930–2000), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1976), պրոֆ. (1977): 1979–84–ին՝ ԵԺՏԻ ռեկտոր, 1996–2000–ին՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն: Աշխ–ները վե–րաբերում են ՀՀ համախառն արդյունքի միջճյուղ. հաշվեկշռի մեթոդաբանության մշակման և միջճյուղ. կապերի, համատի–րությունների կազմավորման հարցերին:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Շիրազ Ալեքսանդրի (ծ. 1947), ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դ–ր (1989), պրոֆ. (2002): Ալեքսանդր ***Մարգարյանի*** որդին: Աշխ–ները վերաբերում են քիմ. և կենսբ. համակարգերի ֆիզքիմ. հետազո–տություններին, սոլվատացման էֆեկտ–

ների ազդեցությանը էլեկտրադոնոր միացությունների ռեակցիոնունակության վրա, մոլ. փոխազդեցությունների ուսումնասիրությանը սպեկտրագրության և տես. եղանակներով: ՀՀ նախագահի (2002) մրց.:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Պարթև Համբարձումի (1898–1980), մանկաբարձ-գինեկոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (1952), պրոֆ. (1953): ՀԽՍՀ վաստ. բժիշկ (1943), Գիտ. վաստ. գործիչ (1960): Լևոն ***Մարգարյանի*** հայրը: Երևանի քաղաք. ծննդատան կազմակերպիչ (1937–50), Մանկաբարձության և գինեկոլոգիայի ԳՀԻ տնօրեն (1949–73): Աշխ-ները վերաբերում են մալարիայի և հղիության, ծննդօգնության, հղիության վրա աշխ-ի պայմանների և մասնագիտ. վնասակար գործոնների ազդեցության, չարորակ նորագոյացությունների առաջացման, մանկ. և մայր. մահացության հարցերին: Կազմել և հրատարակել է մանկաբարձության և գինեկոլոգիայի 1-ին հայ. դասագրքերը: ՀԽՍՀ ԱՆ գլխ. մանկաբարձ-գինեկոլոգ (1953–76): Մանկաբարձ-գինեկոլոգների ընկ-յան վարչության նախագահ (1953–56, 1962–76):

ՄԱՐԳԱՐՅԱՆ Սյուզաննա Համլետի (ծ. 1961), երգչուհի: ՀՀ վաստ. արտիստ (2003): Հրաչյա ***Հարությունյանի*** կինը: 1977-ից՝ «Սերպանտին» վոկալ-գործիք. անսամբլի, 1980–90-ին՝ Հայաստանի պետ. էստրադ., 1990-ից՝ Ռադիոյի էստրադ-սիմֆ. նվագախմբերի մենակատար («Սերն անցավ», «Մայրամուտ», «Մեր փողոցում» ևն):

Ազգ. երաժշտ. մրցանակաբաշխության Հատուկ մրց. (2004), Երգի միութ. մրցույթ-փառատոնի (1981, Պալանգա, Լիտվա) դափնեկիր:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Սոկրատ Մանուկի (ծ. 1943), քիմիկոս-տեխնոլոգ: Քիմ. գիտ. դ-ր (1996), պրոֆ. (2000): Ստեղծել է նոր դարաղանյութեր, որոնք հնարավորություն են տալիս ստանալ էկոլոգիապես մաքուր, բարձրորակ կաշվի և մորթու նոր տեսակներ:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Ստեփան Ենոքի (ծ. 1930), մեքենագետ: Տեխ. գիտ. դ-ր (1971), պրոֆ. (1976): ՀԳԳԱ ակադ. (1994): Արմեն ***Մարգարյանի*** հայրը: Աշխ-ները վերաբերում են կերարտադր-յան և անասնապահության մեքենայացման, գղտ. մեքենաների մշակման հարցերին:

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Վահրամ (1857–1950), կրթ. գործիչ, հրապարակախոս: Դասավանդել է Կ. Պոլսի հայկ. վարժարաններում: Հեղինակ է «Քերական կամ Մանկանց գիրքը» (13-րդ հրտ.՝ 1890), «Նոր ընթերցարան» (10-րդ հրտ.՝ 1901), «Պատկէրազարդ ոսկեմատենիկ հայ տղայոց» (5-րդ հրտ.՝ 1899), «Մանկավարժական քերականութիւն» (մաս Ա–Գ, 1895–1900), «Հայերէն լեզու» (1896), «Դասեր հայ ազգայինի պատմութեան» (1910) և այլ դասագրքերի:

ՄԱՐԳԱՐՅԱՆ Վաչագան Նիկոլայի (ծ. 1954), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (2005): Աշխ-ները վերաբերում են մասնական ածանցյալներով դիֆերենցիալ հավասարումներին և անալիզին:

ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԳԱԼԱԿՏԻԿԱՆԵՐ, սպեկտրի ԱՄ տիրույթում ճառագայթման ավելցուկ ունեցող ***գալակտիկաներ***: Հայտնաբերել է Բենիամին ***Մարգարյանը***:

ՄԱՐԳԱՐՈՎ Ալեքսանդր Ալեքսանդրի (ծ. 1971), քաղաքագետ: Քաղաք. գիտ. դ-ր (2010), պրոֆ. (2012): ԵՊՀ հանր. կառավարման ամբիոնի հիմնադիր-վարիչ (2008–ից): 2007–ից՝ ՍՊՀ երկրների ինստ-ի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են հետխորհրդ. տարածաշրջանի կառավարման ձևերին:

ԵՊՀ (2009), ՀՀ ԿԳՆ (2014) ոսկե, ՀՀ նախագահի Երախտագիտության (2016) մեդալներ:

ՄԱՐԳԱՐՈՎ Էդուարդ Արտեմի (ծ. 1942), ֆուտբոլիստ, մարզիչ: ԽՍՀՄ ս. վ. վ., ս. վ. մ. (1983): «Արարատի» կազմում դարձել է ԽՍՀՄ առաջնությունների ոսկե (1973), արծաթե (1971) մեդալակիր, ԽՍՀՄ գավաթակիր (1973, 1975): ԽՍՀՄ հավաքականի կազմում 1966-ին մասնակցել է աշխարհի VIII առաջնությանը:

ՄԱՐԳԱՐՈՎ Իվան Քրիստափորի (1844–1931), բժշկ. ծառայության գեն-լեյտ. (1904): 1891–1903-ին եղել է 1-ին կովկաս. հեծյալ դիվիզիայի, կազակ., 18-րդ հրաձգ. դիվիզիայի և 14-րդ բանակ. կորպուսի բժիշկ, 1904-ին՝ Կովկաս. բանակ. կորպուսի գլխ. բժիշկ:

ՄԱՐԳԱՐՏԱԽԵՅԻՆԵՐ, **գաղտակուրներ**, ծով. և քաղցրահամ ջրերի ***մարգարիտ*** առաջացնող երկփեղկ փափկամարմինների խումբ: Քաղցրահամ ջրերի Մ. հանդիպում են Եվրոպայում, Հս. Ամերիկայում, Արլ. Ասիայում, այդ թվում՝ 4 տեսակ՝ Հեռավոր Արևելքում: 5 տեսակ պահպանվում է, այդ թվում՝ եվրոպ. Մ. (ռուս. մարգարիտի աղբյուրը): Ծով. Մ. (մոտ 10 տեսակ) ապրում են արևադարձ. ծովերում, արդյունագործ. օբյեկտ են:

ՄԱՐԳԱՐՏԱԽՈՏ (Melica), դաշտավլուկազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 80–90 տեսակ՝ հակված, բարձր, ատրպատական., պարսկ., տրանսիլվան., ղրիմյան՝ տարածված ՀՀ գրեթե բոլոր մարզերում: Աճում է ստորին և միջինլեռն. գոտիների անտառներում, թփուտներում ևն: Ցողունը կանգուն է, բարձր.՝ 30–60 *սմ*: Մ-ի բոլոր տեսակները որակյալ կերաբույսեր են:

ՄԱՐԳԱՐՏԱՁԱՎԻԿ (Belis), **զատկածաղիկ, գեղածաղիկ**, աստղածաղկազգիների ընտանիքի միամյա կամ երկամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 80 տեսակ, ՀՀ-ում՝ 1 (բազմամյա Մ.)՝ հս. մարզերում, մշակության մեջ՝ բազմաթերթ, խոշորածաղիկ սորտեր (ֆրանկֆուրտի փառք, սպիտակ գողիաթ ևն): Գեղազարդիչ է. օգտագործվում է ծաղկաթմբերի, գորգ. ձևավորումների համար:

ՄԱՐԳԱՑՆԾՈՒ (Peucedanum), **երիցանուկ, կորդվախոտն**, նեխուրազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 120 տեսակ, ՀՀ-ում՝ 4(5)՝ վոլգյան, կովկաս., Ջեղելմեյերի ևն՝ Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Տավուշի և այլ մարզերում: Արմատը հաստացած է, ցողունի բարձր.՝ 40–150 *սմ*: Որոշ տեսակներ դեղաբույսեր են, պարունակում են եթերայուղեր: Պատրաստուկները կիրառվում են որպես միզամուղ: Կովկաս. և Ջեղելմեյերի Մ-ները գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

ՄԱՐԳԳՐՈՒՖ (Marggraf) Անդրեաս Սիգիզմունդ (1709–1782), գերմանացի քիմիկոս: Բեռլինի ԳԱ (1738), Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. (1776) անդամ: Ուսումնասիրել է աղերի և միներալների բաղադրությունը մանրադիտակով, ճակնդեղի արմատներում հայտնաբերել է (1747) շաքարի բյուրեղներ:

ՄԱՐԳՈՒԼՈՎԱ (Մարգուլյանց) Թերեզա Քրիստափորի (1912–1994), ատոմ. էներգետիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1951), պրոֆ. (1953): ԽՍՀՄ գիտ. վաստ. գործիչ (1981): Աշխ-ները վերաբերում են ԱԷԿ-ների ջր. ռեժիմին և ջրամշակման, նաև նախագծման ու շահագործման բարելավման հարցերին:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1971, 1978):

ՄԱՐԳՈՒՆՆԻ (Գրիգորյան) Վաղինակ Խաչատուրի (1908–1987), դերասան: ՀԽՍՀ ժող. արտիստ (1965): 1928–30-ին՝ Ամո Խարազյանի շրջիկ, 1930-ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնների դերասան (Գասպար՝ Ժ. Հարությունյանի «Խաչմերուկ», Կարանդիշև՝ Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», Փողհար՝ Մ. Գորկու «Եգոր Բուլըչովը և ուրիշները», Բաղդասար ամի՝ Վ. Փափազյանի «Ժայռը», ևն): Նկարահանվել է կինոյում («Ոսկե ցլիկ», 1955, «Լալվարի որսկանը», 1966, «Ժայռը», 1973, «Խոշոր շահում», 1980, բոլորը՝ Հայֆիլմ, ևն):

ՀԽՍՀ Պետ. մրց. (1979), ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան:

ՄԱՐԴ, հաս. էակ, որն օժտված է գիտակցությամբ, բանականությամբ, պատմ. գործունեության և մշակույթի սուբյեկտ է, այդ ինքնադրսևորման ընթացքում հանդես է գալիս որպես անհատ: Որպես կենսբ. տեսակ՝ Մ. (Homo) պատկանում է պրիմատների կարգին: Մ-ի ֆիզ. տեսակի ձևավորման մասին տես ***Անթրոպոգենեզ***:

«ՄԱՐԴ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ», գիտամեթոդ. ամսագիր (2008–ից, Երևան): ՀՀ ԿԳՆ Կրթության ազգ. ինստ-ի հրտ-յուն: Գլխ. խմբ.՝ Սարիբեկ Հակոբյան:

ՄԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԵՍ (Մարգարյան Հովհաննես Սարգսի, 1890–1972), բանաստեղծ: Հեղինակ է «Ջուլալ երգեր» (1946) սիրային, հայրենասիր. բանաստեղծությունների ժող-ի: Կատարել է նաև թարգմ-յուններ:

ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ, **անթրոպոլոգիզմ**, փիլ. ըմբռնում, որը «մարդ» հասկացությունը համարել է հիմն. աշխարհայացք. կատեգորիա և, դրանից ելնելով, մշակել է պատկերացումների համակարգ բնության, հաս-յան և մտածողության մասին: Ներմուծել է Լ. ***Ֆոյերբախը***, որի հետևորդն էր Ն. Գ. ***Չեռնիշևսկին***: Համանման մոտեցում առկա էր նաև XIX դ-ի հայ իրականության մեջ (Ա. Փափովիչ, Մ. Նալբանդյան): Մ. ս-ի իդեալիստ. դրսևորումները զարգացրել են Ֆ. Նիցշեն, Վ. Դիլթեյը, Գ. Զիմմելը, Մ. Շիլլերը: Լայն առումով՝ Մ. ս. մարդու մասին փիլ. ուսմունքի բաղկացուցիչ է: Տես նաև ***Փիլիսոփայական մարդաբանություն***:

ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **անթրոպոլոգիա** (< հին հուն. antropos – մարդ և ...***լոգիա***), գիտ-յուն մարդու առաջացման ու զարգացման, ռասաների ձևավորման, մարդու կազմվածքի բնականոն տարբերակների վերաբերյալ:

Հայերի առաջին գիտ. մարդաբան. ուսումնասիրությունն արել է Պ. ***Լանգլուհանսը*** (1873): XIX և XX դդ-ի սահմանագծին ավստրիացի մարդաբան Ֆ. ֆոն Լուշանը (1854–1924) առանձնացրել է ***արմենոիդ*** մարդաբան. տիպը, Վ. Վ. ***Բունակն*** այն տեղադրել է եվրասիական և եվրաֆրիկ. ցեղերի մեջ՝ անվանելով «պոնտոզագրոսյան», իսկ ռասայագիտ. նոր դասակարգումով համարվում է «առաջավորասիական»:

Հայերից առաջինը հայերի Մ–յամբ զբաղվել է Ա. Ալթունյանը (Է. Շանտրի հետ). նրա կատարած չափագրությունների հիման վրա 1907–ին բժիշկ Վ. Մինասյանը փորձել է ապացուցել, որ Հայկ. լ–աշխարհի բնակչության մարդաբան. տիպը մոտ է ալ–պիականին, իսկ հայերը խեթերի ժառանգորդներն են: Հայերի Մ–յամբ զբաղվել է նաև ֆրանսահայ մարդաբան Ռուբեն Քերումյանը, ըստ որի՝ արմենոիդ, կովկասա–բալկանյան և դինարյան տիպերը նույն ռասայի տարբերակներ են:

Հայաստանում Մ–յան՝ որպես գիտ–յան, զարգացման հարցում մեծ է Անդրանիկ *Ճաղարյանի* վաստակը: Նրա (Միհրան Ալթունյանի հետ) պեղումներով հայտնաբերված գանգերով վերականգնվել են պատմ. մի շարք դեմքեր:

Ուշագրավ են Նվարդ Քոչարի՝ հայերի մաշկագր. հատկանիշների ուսումնասիրությունները, ըստ որոնց՝ հայերի մոտ դրսևորվում է «առաջավորասիական» ռասայական համալիրը: Անահիտ Խուդավերդյանը բնութագրել է Լոռու, Շիրակի, Արագածոտնի, Սյունիքի մարզերի բրոնզ–երկաթի ժամանակաշրջանների բնակչության մարդաբան. կազմը, հայտնաբերել գանգերի և դեմքերի չափերի որոշակի տարբերություններ Հայկ. լ–աշխարհի հս–արմ–ում (Լոռու և Գեղարքունիքի մարզեր):

ԵՊՀ–ում (Ալեքսանդր Սարաֆյան) առաջինն է կիրառվել ռենտգեն ախտորոշումը գանգի ոսկորների ախտաբան. վիճակների ուսումնասիրության համար:

Հնամարդաբան. նոր գենետիկ. հետազոտություններով կատարվել է ԴՆԹ վերլուծություն մանկ. գտածոների սեռ. պատկանելիությունը որոշելու համար (Արենի 1):

ՄԱՐԴԱՀԱՄԱՐ, ժամանակի որոշակի պահի երկրի կամ նրա առանձին վարչ. միավորի յուրաքանչյուր բնակչի ժողովրդագր., տնտ., սոցիալ., կրթ., ազգ. և այլ հատկանիշներ բնութագրող տվյալների հավաքման գործընթաց: ՀՀ–ում վերջին Մ–ները անցկացվել են 2001–ին և 2011–ին:

ՄԱՐԴԱԳԼԻ, Մարդոյ աղի, Մարդուղի, գվո Տուրուբերան նահնգ–ում՝ Երասխի ակունքների շրջանում: Մոտավորապես համապատասխանում է Էրզրում նահնգ–ի Թեքմանի շրջանին: Ենթադրվում է, որ գվո–ի անունն առաջացել է «մարդեր» (ցեղանուն) և «աղխ» (տոհմ, ցեղ) բառերից: Միջին դարերում իր կենտր. բերդի անունով կոչվել է նաև Սևուկ բերդակ: Հայտնի է աղբյուրներով, արոտավայրերով, խոտհարքներով:

ՄԱՐԴԱՆՅԱՆ Ռեմիկ Սուրենի (1955–2000), ՀՀ բանակի գնդ. (1993): 1992–ից ծառայել է ՀՀ բանակում: 1992–94–ին մասնակցել է ԼՂՀ Մարտակերտի, Քելբաջարի (Քարվաճառ), Լաչինի («Մարդասիրական միջանցք») ու Ֆիզուլիի (Վարանդա), Կուբաթլուի (Սանասարավան) ինքնապաշտպ. մարտերին: Զոհվել է ավտովթարից:

ՀՀ 2–րդ, ԼՂՀ 1–ին (հետմահու) աստիճանների «Մարտական խաչ» շքանշաններ:

ՄԱՐԴԱՆՅԱՆ Սոնա Սմբատի (ծ. 1939), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դ–ր (1994): Աշխ–ները վերաբերում են հյուսվածքների սպիտակուցների և ֆերմենտների անջատմանը, նրանց ակտիվ կենտրոնների կառուցվածքին, համակարգի այլ բաղադրամասերի հետ փոխազդեցությանը, կատալիտիկ հատկություններին ու բժշկության մեջ դրանց կիրառմանը:

ՄԱՐԴԱՉՅՈՎ Սերգեյ Ռուֆովիչ (1905–1974), ռուս. կենսաքիմիկոս: ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1957): Սոց. աշխ. հերոս (1964): Աշխ–ները վերաբերում են կենդանիների և միկրոօրգանիզմների ազոտային փոխանակությանը, կինետիկային, էնզիմոախտորոշման մեթոդներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949):

ՄԱՐԴԱՄԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ Բաքվի հայոց, հայկ. բարեգործ. կազմ–յուն: Հիմնադրվել է 1864–ին Բաքվում՝ բժշկապետ Դավիթ *Առապտյանի*, Մ. Զոհրապյանցի և տեղի ազդեցիկ այլ հայերի նախաձեռնությամբ: Մինչև 1875–ը գործել է հիմնականում Բաքվում, 1875–99–ին՝ նաև Ռուսաստանի հայաբնակ վայրերում, մասամբ՝ Արմ. Հայաստանում: Նյութ. օգնություն է ցուցաբերել կարիքավոր հայ մտավորականներին, ուսանողներին, գաղթականներին, բացել հիվանդանոցներ, բարեգործ. ճաշարաններ են: Ունեցել է տպարան, գրադարան (1914–ին՝ 21 800 անուն գիրք, 1920–ին նրա հիմքի վրա բացվել է Ադրբեջանի հանրապետ. հանրային գրադարանը): Գործել է մինչև 1920–ը:

ՄԱՐԴԱՍՏԱՆ, Մարդուցայք, Մարդոցեք, գվո *Վասպուրական* նահնգ–ում՝ Մակու ք–ից արմ.՝ Կոտուրի (Վասպուրականի) լ–ների արլ. ստորոտներին: Մինչև V դ. մտել է Մարդպետունիների տոհմի տիրույթների մեջ, ապա անցել *Արծրունիներին*: IX դ–ից հիշվում է որպես Արծրունիների կալվածք: Վասպուրականի թագավորության անկումից (1021) հետո դարձել է տարբեր ցեղերի ասպատակությունների թատերաբեմ, 1502–ից մտել է Սեֆյան Իրանի կազմի մեջ:

ՄԱՐԴԵՐ, հնագույն ցեղ Իրանում և Հայաստանում: Հիշատակվում են մ. թ. ա. VII–VI դդ–ում: Հայաստանում հիմնականում բնակվել են Վասպուրական նահնգ–ում՝ Վանա լճից հվ–արլ.՝ *Մարդաստան* գվո–ում: Ենթադրվում է, որ Մ. ցեղանունն ընկած է Մարդե բերդի, Մարդուցայք և *Մարդաղի* գվո–ների անունների հիմքում: Տիգրան Բ–ի բանակում Մ. մասնակցել են հռոմ. զորքերի դեմ մարտ. գործողություններին: Հետագայում ձուլվել են հայ ժողդ–ին՝ հավանաբար հիմնադրելով *Մարդպետունիների* նախ–յունը:

ՄԱՐԴԻՅԱՆ Մարինե Արարատի (ծ. 1959), հանրային առողջապ–յան բնագավառի մասնագետ: Բժշկ. գիտ. դ–ր (2001), պրոֆ. (2002): Աշակել է ՀՀ դեռահասների առողջության պահպանման և բուժօգնության կազմակերպման հիմն. ուղղությունները:

ՄԱՐԴԻՆ, Մարտին, Մերտին, ք. Արմ. Հայաստանի Դիարբեքիրի նահնգ–ում (այժմ՝ Թուրքիայի Մարդինի նահնգ–ի վարչ. կենտրոնը): Հին բերդաքաղաք է. պահպանվել են շենքերի, ամրոցի և պարիսպների ավերակները: 1914–ին ունեցել է 25 հզ. բն., որոնցից 1500–ը՝ հայեր, մնացածը՝ թուրքեր, ասորիներ, քրդեր, արաբներ ևն: Հայերը տեղահանվել են 1915–ին, մեծ մասը զոհվել է գաղթի ճանապարհին:

ՄԱՐԴՈՅԱՆ Լևոն Գրիգորի (ծ. 1954), ֆիզիկոս–տեսաբան: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (2006): ՀՀ ԿԳՆ Գիտպետկոմի աշխատակազմի պետ. (2014–ից): Աշխ–ները վերաբերում են քվանտ. մեխանիկային և մաթ. ֆիզիկայի հարցերին:

ՄԱՐԴՊԵՏՈՒՆԻՆԵՐ, նախարար. տոհմ Արշակունյաց Հայաստանում (I–V դդ.): Ենթադրվում է՝ սերել են *մարդերի* ցեղից: Արքունիքում ժառանգաբար վարել են մարդպետության գործակալությունը: Հիշվում է «Հայր մարդպետ», «Հայր թագավորի», նրանց պաշտոնը՝ «Հայրություն» անուններով: Տիրույթը հիմնականում եղել է Մարդաստան գվո–ը: Մ. թուլացել են, և նրանց վարած գործակալությունը վերացել է V դ–ի սկզբներին: Հետագայում ենթարկվել են Արծրունիներին: Վերջինները, տիրելով Մ–ի կալվածքները, յուրացրել են նաև նրանց տիտղոսը:

«ՄԱՐԴՈՒ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ», աշխարհագր. դպրոց Ֆրանսիայում XIX դ–ի վերջին և XX դ–ի 1–ին կեսին: Ներկայացուցիչները (Պ. Վիդալ դը լա Բլաշ, Է. Մարտոն, Ժ. Բրյուն, Է. Դալուա և ուր.) աշխարհագրության խնդիրը համարել են բնության և մարդու փոխհարաբերության ուսումնասիրությունը՝ շեշտելով մարդու գործունեության տարբեր ձևերի վրա աշխարհագր. միջավայրի ազդեցությունը:

ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀՌՉԱԿԱԳԻՐ, *Ֆրանսիական մեծ հեղափոխության* ծրագրային փաստաթուղթ, որը հռչակել է նրա հիմն. սկզբունքները՝ ժող. գերիշխանության և մարդու անկապտելի բնական իրավունքները: Ընդունվել է 1789–ի օգոստ. 26–ին Սահմանադիր ժողովում:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ (ՄԻՊ), **օմբուդսմեն**, անկախ հաս. փաստաբան, պաշտոնատար անձ, որին նշանակում է երկրի կառ–յունը կամ խորհրդարանը: Իրականացնում է պետ. ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների ու ազատությունների պաշտպ–յունը: ՄԻՊ–ի ինստ–ը ՀՀ–ում ներդրվել է 2004–ից. ընտրում է ԱԺ–ն՝ պատգմ–ների ընդհ. թվի ձայների առնվազն 3/5–ով՝ 6 տարի ժամկետով: ՀՀ ՄԻՊ են եղել Լարիսա Ալավերդյանը, Արմեն Հարությունյանը, Կարեն Անդրեասյանը, Արման Թաթոյանը (2016–ից):

ՄԱՐԴՈՒԿ, Բել–Մարդուկ, Բաբելոն ք–ի հովանավոր աստվածը, բաբելոն. պանթեոնի գերագույն աստվածություն: Նույնացվել է շումեր. *Էնլիլի* հետ:

ՄԱՐԵ (Marais) Ժան (Ժան Ալֆրեդ Վիլլեն–Մարե, 1913–1998), ֆրանսիացի դերասան: 1930–ական թթ–ին առաջատար դերեր է խաղացել Ժ. Կոկտոյի պիեսներում, ապա՝ ֆիլմերում («Գեղեցկուհին և հրեշը», «Երկգլխանի արծիվ», «Օրփեոս», «Օրփեոսի կտակը»): Նկարահանվել է նաև «Կոմս Մոնտե–Քրիստո», «Երկաթե դիմակ», «Փարիզի գաղտնիքները», «Սպիտակ գիշերներ», «Ֆանտոմաս», «Կոկոդցի ջենտլմենը» և այլ կինոնկարներում:

ՄԱՐԵՄԽՈՍ (Geum), վարդազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 60 տեսակ, ՀՀ–ում՝ 2՝ սովոր., գետային՝ Տավուշի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի մարզերում: Յողունի բարձր.՝ մինչև 80 *սմ*: Դեղաբույս է. պարունակում է աղաղանյութեր, գլիկոզիդներ, C վիտամին, եթերայուղ: Պատրաստուկներն օգտագործում են որպես հակաբորբոք., հակամանրէային, արյունահոսությունը դադարեցնող, կապող միջոց:

ՄԱՐԵՅ (Marey) Էթիեն Ժյուլ (1830–1904), ֆրանսիացի ֆիզիոլոգ և գյուտարար: Ֆրանսիայի ԳԱ նախագահ (1895–ից): Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. անդամ (1902): Աշակել է ֆիզիոլոգ. կենսընթացների գրաֆիկ. գրանցման մեթոդ: Ստեղծել է մի շարք սարքեր (արտագրիչ, զարկերակաճնշագրիչ ևն):

ՄԱՐԵՇԱԼ (Maréchal) Պիեռ Սիլվեն (1750–1803), ֆրանսիացի գրող, փիլ–հրապարակախոս: «Ֆրանսիացի Լուկրեցիոսը» (1797) մանկավարժ. պոեմում արծարծել է Լուսավորության դարաշրջանի սոցիալ–փիլ. գաղափարներ: Հեղինակ է երգ–թռուցիկների, «Պյութագորասի ճանապարհորդությունը» (հ. 1–6, 1799) պատմաքաղ., լուսավոր. վեպի, «Հին և նոր աթեիստների բառարան» (1800) աշխ–յան:

ՄԱՐԵՄՅԵՎ Ալեքսեյ Պետրովիչ (1916–2001), օդաչու, գնդ. (1978): ԽՄ հերոս (1943): Պատմ. գիտ թեկնածու (1956): ՀՄՊ–ի ժամանակ եղել է կործանիչ ինքնաթիռների գնդի օդակի հրամ., գնդի հրամ–ի օգնական, գնդի շտուրման: Օդ. մարտերում խփել է թշնամու 11 ինքնաթիռ, որից 7–ը՝ ծանր վիրավորվելուց (1942–ի մարտ) և 2 սրունքի անդամահատումից հետո՝ պրոթեզներով (1943–ի մայիսին վերադարձել է գունդ): Մ–ի սխրանքը նկարագրված է Բ. Պոլևոյի «Պատմություն իսկական մարդու մասին» վիպակում:

ՄԱՐԵՐ, **մեդացիներ**, հնագույն ժողտ Իրան. բարձրավանդակում, ***Մարաստանի*** հիմն. բնակչությունը:

ՄԱՐԵՐԻ, հայկ. հեթանոս. տոմարի 10–րդ ամսվա անունը: Մ–ի 1–ը համապատասխանում է մայիսի 8–ին:

ՄԱՐԶ, վոմս ՀՀ–ում և մի շարք այլ երկրներում: ՀՀ տարածքը բաժանված է 10 Մ–ի՝ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռիի, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի Մ–երի:

ՄԱՐԶԱԿԱՆ ԱԿՐՈԲԱՏԻԿԱ, հավասարակշռության պահպանման և մարմնի պտույտներով (հենարանից ու առանց հենարանի) հատուկ ֆիզ. վարժությունների (ուժային, թռիչքային ևն) համալիրների մրցումներ: Մ. ա–ի միջազգ. ֆեդերացիայում՝ ԻՖՍԱ (IFSA, հիմն.՝ 1973) ընդգրկված է ավելի քան 39 երկիր (2015): Աշխարհի առաջնություններն անցկացվում են 1974–ից, Եվրոպայինը՝ 1938–ից:

ՄԱՐԶԱԿԱՆ ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, բժշկագիտ–յան բաժին. ուսումնասիրում է ֆիզկուլտուրնիկների և մարզիկնեի առողջության ու ֆիզ. զարգացման խնդիրները, մարզ. պարապմունքների հետ կապված հիվանդությունների ախտորոշումը, բուժումը և կանխարգելումը: ՀՀ–ում գործում է համանուն ընկ–ը (1959–ից): Մ. բ–յան միջազգ. ֆեդերացիայում (FIMS, հիմն.՝ 1928) ընդգրկված է շուրջ 100 երկիր (2010):

ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐ, սպորտի մի շարք ինքնուրույն տեսակներ, որոնք անցկացվում են որոշակի կանոններով: Մ. խ. լինում են թիմ. (ֆուտբոլ, բասկետբոլ ևն), անհատ. (շաշկի, շախմատ ևն) և անհատական–թիմ. (թենիս, բաթմինտոն ևն): Դրանց մի մասը ներառված է օլիմպ. խաղերի ծրագրում: Առավել հայտնի են բաթմինտոնը, վոլեյբոլը, բասկետբոլը, բեյսբոլը, թենիսը, ֆուտբոլը, հոկեյը ևն:

ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ, մարզիկի որակավորման պաշտոն. հաստատում՝ հիմնված սահմանված պահանջների կամ նորմատիվների կատարման վրա: Մ. կ. են՝ սպորտի վարպետության թեկնածուն, մեծահասակների I, II, III և երիտասարդ. կարգերը: Շախմատի և շաշկու համար կա նաև IV կարգ:

ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱԶՄԻՄՆԵՐ, շնորհվում են միջազգ., ազգ. և այլ պաշտոն. մարզ. մրցումներում ցուցաբերած արդյունքների, մարզ. դասակարգմամբ սահմանված նորմատիվների և պահանջների կատարման, մանկավարժ. և մարզ. բեղմնավոր գործունեության, մարզ. մրցավարի ակտիվ աշխ–ի համար. օր.՝ շախմատի միջազգ. գրոսմայստեր: ԽՍՀՄ–ում պատվ. Մ. կ. էին՝ ԽՍՀՄ ս. վ. վ. (1934–ից), ԽՍՀՄ ս. վ. մ. (1956–ից), ԽՍՀՄ ս. վ. (1935–ից), ԽՍՀՄ միջազգ. կարգի ս. վ. (1965–ից), համամիութ. կարգի մրցավար (1934–ից), սպորտի պատվ. մրցավար (1972–ից): ՀՀ–ում 1996–ից շնորհում են ս. վ. վ., ս. վ. մ., միջազգ. կարգի ս. վ., ս. վ., ֆիզ. կուլտուրայի և սպորտի վաստ. գործիչ, ֆիզ. կուլտուրայի և սպորտի վաստ. աշխատող և այլ կոչումներ:

«ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», ՀՀ սպորտվարչության ազգ. օլիմպ. ֆեդերացիայի և պաշտպանամարզատեխ. ընկ–յան պաշտոնաթերթ (1956–2003, Երևան, մինչև 1990–ը՝ ՀԽՍՀ սպորտկոմիտեի, ՀԱՄԽ–ի պաշտոնաթերթ, 1956–90–ին՝ «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ»): Խմբ–ներ՝ Մարտուն Թութխալյան, Վիլեն Մարտիկյան, Սերգեյ Նազարյան, Թորգոմ Կճոզյան, Սամվել Մուրադյան:

ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ, ֆիզկուլտուրան և սպորտը քարոզող թերթեր, հանդեսներ, տեղեկատուներ և պարբ. այլ հրտ–յուններ: ՀՀ–ում լույս են ընծայվել «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» (1956–1990, 1990–ից՝ ***«Մարզական Հայաստան»***), Կ. Պոլսում՝ ***«Մարմնամարզ»*** (1911–14), «Հայ սկաուտ» (1919–22), Փարիզում՝ «Հայ սկաուտ» (1927–35), «Հայ արի» (1929–35), Կահիրեում՝ «Մարզիկ» (1951–54), Բեյրութում՝ «Կայծ» (1943–47), «Հայ սկաուտ» (1975–80) և այլ պարբ–ներ: Ներկայում լույս են տեսնում ***«Շախմատային Հայաստան»***, ***«Մարզաշխարհ»***, ***«Ֆուտբոլ պլյուս»***, ***«Ֆուտբոլ 365»*** (բոլորը՝ Երևան), ***«Մարզիկ»*** (Բեյրութ), ***«ՀԵՄ եռամսեայ»*** (Երուսաղեմ) և այլ պարբ–ներ:

ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ, սպորտի հիմն. տեսակներից. ներառում է ազատ վարժություններ, հենացատկեր և վարժություններ մարզագործիքների վրա (պտտաձող, զուգափայտեր, օղակներ և նժույգ՝ տղամարդկանց համար, տարբեր բարձր–յան զուգափայտեր և գերան՝ կանանց համար): Ժամանակակից Մ. մ–յան հիմքերը XIX դ–ի սկզբին ստեղծել է գերմանացի մանկագետ Ֆ. Ն. Յանը: Մ. մ–յան միջազգ. ֆեդերացիայում՝ ՖԻՀ (FIJ, հիմն.՝ 1881) ընդգրկված է ավելի քան 130 երկիր (2010): Օլիմպ. խաղերի ծրագրում է 1896–ից, աշխարհի առաջնությունն անցկացվում է 1903–ից, Եվրոպայինը՝ 1955–ից: ՀՀ–ում գործում է Մ. մ–յան ֆեդերացիա (1993–ից):

ՄԱՐԶԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՆԵՐ, ֆիզ. կուլտուրայի, դաստիարակության և սպորտի բնագավառի միջազգ. (համաշխ. և տարածաշրջ.) և ազգ. ոչ պետ., հաս. կազմ–յուններ: 2015–ին աշխարհում գործել են ավելի քան 260 Մ. ֆ. և մարզ. այլ միավորումներ: 1992–ից Մ. ֆ. ստեղծվել են նաև ՀՀ–ում (51, 2017):

«ՄԱՐԶԱՇԽԱՐՀ», մարզ., տեղեկատվ., մշակութ. շաբաթաթերթ (1993–ից, Երևան): Խմբ.՝ Ռոլանդ Շառոյան:

«ՄԱՐԶԻԿ», մարզ. ամսաթերթ (1980–ից, Բեյրութ): ՀՄԸՄ կենտր. վարչության հրտ–յուն:

ՄԱՐԶՊԱՆ, **մարծպան** (պիկ.՝ marzpan – կուսապալ), Սասանյան Իրանի գերիշխանության ենթակա վտմ–ի՝ ***մարզպանության*** կառավարիչ և արքայի տեղապահ: Հայ Արշակունի արքայատան անկումից (428) և ***Մարզպանական Հայաստանի*** ստեղծումից հետո Սասանյան արքունիքը V–VII դդ–ում Հայոց Մ–ներ է նշանակել և՛ պարսիկ, և՛ հայ իշխանների: Հայաստանում Մ–ին անվանել են նաև «Տանուտեր Հայոց»:

ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ, Սասանյան Իրանի (Երանշահր) գերիշխանությանը ենթակա առանձնահատուկ վտմ V–VII դդ–ում: Ընդգրկել է հիմնականում Այրարատ, Տուրուբերան, Սյունիք, Վասպուրական, Մոկք և Տայք, հաճախ նաև Արցախ նահանգ–ները՝ 134 հզ. *կմ*², իսկ Արցախի հետ՝ շուրջ 145 հզ. *կմ*² տարածքով և շուրջ 3 մլն հայ բնակչությամբ: Կառավարել է ***մարզպանը***:

ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅՈՒՆ, վարչ. բաժանում Սասանյան Իրանում (Երանշահր): V–VII դդ–ում Մ. է եղել ***Մարզպանական Հայաստանը***:

ՄԱՐԶՊԵՏ, մարզում պետ. կառավարման մարմնի՝ մարզպետարանի ղեկ–ը ՀՀ–ում: Մ–ին պաշտոնի նշանակում և ազատում է ՀՀ Կառ–յունը, որոշումը վավերացնում է ՀՀ նախագահը: Մ–ներն իրականացնում են ՀՀ Կառ–յան քաղ–յունը մարզերում:

ՄԱՐԶՎԱՆ, **Մարսվան**, ք. Սեբաստիայի (Սվազ) նահգ–ում (այժմ՝ Թուրքիայի Ամասիայի նահգ–ի վարչ. կենտրոնը): XVI դ–ից տիրել են օսմ. թուրքերը: 1914–ին ունեցել է 35 հզ. բն., որոնցից 14 հզ–ը՝ հայեր, մնացածը՝ թուրքեր, հույներ: Հայերն ունեցել են 3 եկեղեցի և դպրոցներ (Ազգ. ճեմարան, Հոիփսիմյան): Գործել է «Կրթասիրաց միություն» մշակութ. ընկ–ը, լույս են տեսել պարբ–ներ: Մ–ի հայերը տեղահանվել են 1915–ին, մեծ մասը զոհվել է գաղթի ճանապարհին:

ՄԱՐԹԱՅԱՆ Հակոբ Վահանի, **Դիլաչար** (թուրք. – լեզվի բանալի, 1895–1979), լեզվաբան, թուրքագետ, խմբ., թարգմանիչ: Պրոֆ. (1922): 1932–ից՝ Թուրքիայի լեզվագիտ. ընկ–յան գլխ. մասնագետ: Մ. թուրք. այբուբենի հեղինակն է: Եղել է թուրք. հանրագիտարանի գլխ. խմբ.: 1918–ին Զահլեում՝ «Լոյս», 1922–ին Կ. Պոլսում՝ «Լսարան», 1926–ին Սոֆիայում՝ «Ռահվիրա», 1928–ին Բեյրութում՝ «Աշակոյթ» պարբ–ների հիմնադիր: Հեղինակ է «Առաջին փորձութիւն» (1922) պիեսի, «Գրի ծագումը եւ տարածումը» (1928), «Աստուածաշունչը եւ աշխարհաբարը» (1956) և այլ հայագիտ., «Արեւմտյան թուրքերենը» (1953), «Թուրքերենը որպես պետական լեզու» (1962), «Ընդհանուր ակնարկ թուրքերենի մասին» (1964, բոլորը՝ թուրք.) թուրքագիտ. աշխ–ների: Անգլ. է թարգմանել Լ. Շանթի «Հին աստվածները» (1922), անգլ–ից հայ.՝ անգլիացի բանաստեղծների գործերից («Ալպիօնի պարտէզ»ն», 1929):

ՄԱՐԹԵՆ ԴՅՈՒ ԳԱՐ (Martin du Gard) Ռոժե (1881–1958), ֆրանսիացի գրող: Հեղինակ է «Թիբոների ընտանիքը» (հ. 1–8, 1922–40, հայ.՝ «Թիբոները», հ. 1–2, 1984) վեպի, որտեղ ներկայացրել է XX դ–ի սկզբի Ֆրանսիայի ռեալիստ. պատկերը, «Ինքնակենսագրական և գրական հուշեր» (1955) գրքի: Նոբելյան մրց. (1937):

ՄԱՐԹԻՆ (Martin, Փափազյան) Անդրեա (ծ. 1947), դերասանուհի: Նկարահանվել է կինոյում («Մառախուղ», «Փախուստ Նյու Յորքից», «Ռոփապար», «Չափազանց շատ արև» ևն), խաղացել հեռուստաբեմադրություններում: 1991–ին այցելել է Հա–

յաստան: «Տարվա լավագույն դերասան» (1991, Բրոդվեյ): «Էմմի» մրց. (1982, 1983):

ՄԱՐԻ (Marie) Պիեռ (1853–1940), ֆրանսիացի նյարդախտաբան: Նկարագրել է ակրոմեգալիան (1886) և նյարդ. համակարգի մի շարք հիվանդություններ (կոչվում են իր անունով):

ՄԱՐԻ (այժմ՝ Թել-Հարիբի բլուր, Սիրիայում), հնագույն ք-պետություն Եփրատի միջին հոսանքում: Առաջացել է մ. թ. ա. III հզ-ամյակի սկզբին: Մ. թ. ա. XIV դ-ից՝ շումեր. պետությունների կազմում: Մ. թ. ա. 1758-ին կործանել է Բաբելոնի թագավոր *Համմուրաբին*: Պեղումներով (1933-ից) հայտնաբերվել են մ. թ. ա. XIX–XVIII դդ-ի սեպագիր վավերագրերի պետ. արխիվը (ավելի քան 20 հզ. պնակիտ, XVIII դ-ի պալատի մնացորդներ): Մ-ի գեղարվ-ի հուշարձանները ներկայացնում են *Բաբելա-Ասորական մշակույթի* ճյուղերից մեկը:

ՄԱՐԻ, գվո Պարսկահայք նահգ-ում: Հավանաբար համապատասխանում է Մարի գետի (այժմ՝ Բարանդուզ) հովիտն ընդգրկող Մարգյավառ շրջանին (այժմ՝ Իրանում):

ՄԱՐԻ, ք. Թուրքմենստանում, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Սուրղար գետի ափին: Բն.՝ 126 հզ. (2010): Երկթղ. հանգույց է: Հիմնադրվել է 1884-ին:

ՄԱՐԻ ԱՆՏՈՒԱՆԵՏ (Marie Antoinette, 1755–1793), Ֆրանսիայի թագուհի: *Լյուդովիկոս XVI*-ի կինը, Ավստրիայի կայսր *Ֆրանց I*-ի դուստրը: Ֆրանս. մեծ հեղ-յան սկզբից ոգեշնչել է հակահեղ. դավերն ու օտարերկրյա ինտերվենցիաները: Միապետության տապալումից (1792-ի օգոստ. 10) հետո ձերբակալվել է և դատարանի որոշմամբ գլխատվել:

ՄԱՐԻ ԷԼ, Մարի Էլի Հանրապետություն, ՌԴ Մերձվոլգյան դաշն. օկրուգում: Տարածքը՝ 23,4 հզ. *կմ*², բն.՝ 700,1 հզ. (2009): Վարչ. կենտրոնը՝ *Յոշկար Օլա*: Կազմավորվել է 1920-ին՝ որպես Մարիական ԻՕ՝ ՌԽՖՍՀ կազմում: 1936-ին վերակազմավորվել է Մարիական ԻԽՍՀ-ի: 1992-ից՝ արդ անվանումով: Գլխ. գետը՝ *Վոլգա*: Անտառներն զբաղեցնում են տարածքի 46 %-ը:

ՄԱՐԻ ԹՅՈՒԴՈՐ (Mary Tudor, 1516–1558), Անգլիայի թագուհի՝ 1553–58-ին: *Հենրի VIII*-ի դուստրը: Վերականգնել է կաթոլիկությունը (1554), որն ուղեկցվել է Ռեֆորմացիայի կողմնակիցների դաժան հալածանքներով (վաստակել է «Արյունոտ» մականունը): 1554-ին ամուսնացել է Իսպանիայի թագաժառանգի (1556-ից՝ *Ֆիլիպ II* թագավոր) հետ, որը հանգեցրել է կաթոլիկ Իսպանիայի հետ մերձեցման:

ՄԱՐԻ ՆՎԱՐԴ (Գարայան Մարի Հովսեփի, 1853–1885), դերասանուհի: 1870-ական թթ-ի սկզբին՝ Պետրոս Մաղաքյանի Արևելյան թատրոնի, 1874–78-ին՝ Հակոբ Վարդովյանի Օսմանյան թատրոնի, 1881–82-ին՝ Թիֆլիսի հայ թատերախմբի, ապա՝ Սարտիրոս Մնակյանի թատերախմբի առաջատար դերասանուհի (Մարգարիտ Գոթիե՝ Ա. Դյումա-որդու «Կամելիազարդ տիկինը», Մարքրիտ՝ Գ. Սունդուկյանի «Խաթաբալա», Դեզդեմոնա՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», Աննա Անդրեևնա՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», ևն):

ՄԱՐԻ ՍՏՅՈՒԱՐՏ (Mary Stuart, 1542–1587), Շոտլանդիայի թագուհի՝ 1542 (փաստորեն՝ 1561)–67-ին: Հավակնել է նաև Անգլիայի գահին՝ որպես *Հենրի VII*-ի ծոռ: Փորձելով կաթոլիկների օգնությամբ ամրապնդել իր իշխանությունը Շոտլանդիայում՝ առաջացրել է կալվինականների դժգոհությունը, որը վերաճել է (1567) ապստամբության: Ռեֆորմացիայի հարկադրանքով Մ. Ս. հրաժարվել է գահից և փախել Անգլիա, որտեղ Էլիզաբեթ թագուհու հրամանով բանտարկվել է, ապա՝ գլխատվել:

ՄԱՐԻԱ ԹԵՐԵԶԱ (Maria Theresia, 1717–1780), Ավստրիայի թագուհի՝ 1740-ից: Հաջորդել է հորը՝ *Կառլ VI*-ին: Մինչև 1765-ը կառավարել է ամուսնու (կայսր *Ֆրանց I*), իսկ 1765-ից՝ որդու (*Յոսիֆ II*) հետ: Իրականացրել է բարեփոխումներ: *Յոթնամյա պատերազմում* (1756–63) չի կարողացել Պրուսիայից հետ գրավել Սիլեզիան:

ՄԱՐԻԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, մարիացիների 4 բարբառների (լեռն., հս-արմ., մարգագետն. և արմ.) անվանումը: Պատկանում են ուգրա-ֆիննո. լեզվաընտանիքի ֆիննո. ճյուղին: Լեռն. և մարգագետն. բարբառներն ունեն գր. ձևեր: Լեռնամարիական և մարգագետնամարիական լեզուները *Մարի Էլի* պետ. լեզուներն են: Գրի հիմքում ռուս. այբուբենն է:

ՄԱՐԻԱՄ, XV դ-ի գրիչ, ծաղկող: 1456-ին Ջուղայում ընդօրինակել է Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան» ձեռագիրը (հայտնաբերել է Արամ *Երևշանը* 1946-ին Իրանի Սպահանի Չարմահալ գվո-ի Սմուռան գ-ում): Ձեռագրի մանրանկարներն առանձնանում են ոճերի և թեմաների բազմազանությամբ, կատարման նրբությամբ և բանաստեղծականությամբ: Մ. XV դ-ի միակ նկարչուհին է, որի ստեղծագործությունների նմուշները պահպանվել են:

ՄԱՐԻԱՄ, լ-ներ Հայկ. լ-աշխարհում՝ Կոպա (Կապոյտ) լ-ներից հվ՝ Եփրատ գետի և նրա ձախակողմյան վտակ Դերջանի միջև: Երկ.՝ մոտ 45 *կմ*, բարձր.՝ մինչև 2600 *մ* (Մարիամ լ.):

ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Աստվածամայր, Տիրամայր, Աստվածածին, սուրբ Կույս Մարիամ, *Հիսուս Քրիստոսի* մայրը, որը նրան ծնել է կուսական հղիությամբ՝ Սուրբ Հոգով: Ծնվել է մ. թ. ա. I դ-ի վերջին Նազարեթում՝ բարեպաշտ Հովակիմի (Դավիթ թագավորի տոհմից) և Աննայի (Ահարոն քահանայապետի տոհմից) ընտանիքում: Մ. Ա-ի երկր. կյանքի գլխ. իրադարձությունները (Աստվածածնի մուտքը տաճար, Սուրբ տիրամոր ավետումը, Աստվածածնի վերափոխումը) նշվում են եկեղեց. ծիսակատարություններում: Հայ մարեմաբանության սկզբունքներն են Մարիամի աստված. մայրության, նրա հավիտեն. կուսության, Աստվածածնի սրբության և մաքրության, Տիրոջ առջև նրա բարեխոս. միջնորդության ընդունումը:

ՄԱՐԻԱՄ ԵԳԻՊՏԱՑԻ (ծ. թ. անհտ–522), համաքրիստ. տոնելի սուրբ, ապաշխարող կանանց հովանավորուհին: Ըստ ավանդության՝ եղել է անառակ կին, սակայն Երուսաղեմ ուղևորվող ուխտագնացներին միանալով՝ դարձի է եկել և 47 տարի ապաշխարելով ապրել անապատում: Հիշատակի օրն Ուղղափառ եկեղեցում ապրիլի 1-ին (14) է, Կաթոլիկ եկեղեցում՝ ապրիլի 2-ին:

ՄԱՐԻԱՄ ՄԱԳԴԱԼԵՆԱՑԻ (լատ.՝ Maria Magdalena), համաքրիստ. տոնելի սուրբ: Ըստ Աստվածաշնչի՝ նրան բժշկել է *Հիսուս Քրիստոսը*. վանել է նրա միջի 7 դևերին, որից հետո Մ. Մ. դարձել է Քրիստոսի հետևորդը, ականատես եղել նրա չարչարանքներին: Հուղարկավորությունից հետո կանանց հետ այցելել է Քրկչի գերեզման և առաջինն է տեսել Քրիստոսի Հարությունը: Արմ. ավանդության մեջ Մ. Մ. նույնացվել է Ավետարանում հիշատակվող այլ Մարիամի՝ Ղազարոս Բեթանիացու քրոջ հետ, ինչպես նաև անանուն ապաշխարող անառակի հետ, որը յուղով օծել է Հիսուսի ոտքերը:

ՄԱՐԻԱՄ-ՂՈՒԿԱՍՅԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑ, հիմնադրվել է 1864-ին Շուշիում՝ Պ. Շանշյանի, Պ. Պողոշյանի և շուշեցի Հախումյան ամուսինների ջանքերով: Մի քանի տարի անց փակվել է, վերաբացվել 1876-ին՝ «Հոիփսիմյան օրիորդաց դպրոց» անվամբ: 1886-ից՝ երկդասյան իգական դպրոց: 1894-ից անցել է միջնակարգ դասընթացի: 1913-ին շուշեցի Ղուկասյան եղբայրները դպրոցին հատկացրել են 200 հզ. ռ. և իրենց տունը, դպրոցը անվանել «Մարիամ-Ղուկասյան»՝ ի հիշատակ իրենց հանգուցյալ քրոջ: Գործել է մինչև 1920-ը:

ՄԱՐԻԱՄՅԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑ, հիմնադրվել է 1868-ին Թիֆլիսում՝ Սբ Աստվածածին եկեղեցուն կից՝ Խորենն Ստեփանեի նախաձեռնությամբ: Սկզբում՝ մեկդասյա, 1896-ին ուներ 3 բաժանմունք: Մի քանի անգամ փակվել է: Գործել է մինչև 1920-ը:

ՄԱՐԻԱՆՅԱՆ ԻՋՎԱԾՔ, Համաշխ. օվկ-ի ամենախոր իջվածքը Խաղաղ օվկ-ի արմ-ում՝ Մարիանյան կղզիներից հվ-արլ.: Երկ.՝ 1340 *կմ*: Ունի V-աձև կտրվածք, թեք լանջեր, հարթ հատակ (1–5 *կմ* լայնությամբ): Առյգն խոր.՝ 10 920 *մ*:

ՄԱՐԻԱՆՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ (Marianas Islands), կղզեխումբ Խաղաղ օվկ-ում՝ Միկրոնեզիայում: Բաղկացած են 15 մեծ և մի քանի փոքր կղզիներից ու խութերից: Տարածքը ավելի քան 1,1 հզ. *կմ*², բն.՝ 213 հզ. (2010): Բարձր.՝ մինչև 965 *մ*: Ունեն հրաբխ. և բուստ. ծագում, կան գործող հրաբուխներ: Գուամ կղզին ԱՄՆ-ի տիրույթն է, մնացած կղզիները՝ նրա կառավարման ենթակայությամբ: Մշակում են շաքարեղեգ, կոկոսյան արմավենի, բանան, բամբակենի, ցիտրուսներ: Գլխ. նվինգստ-ը՝ Ագանիա (Գուամ կղզում): Հայտնագործել է Ֆ. *Մագելանը* 1521-ին և կոչել իսպ. Ֆիլիպ IV թագավորի կնոջ անունով:

«ՄԱՐԻԱՆՆԱ» ՍՊԸ, կաթնամթերքի արտադր-յան ձեռն. ՀՀ-ում: Հիմնադրվել է 1997-ին: Արտադրում է չոր կաթ, կարագ, պանիր, անարատ և կաթնաթթվային արտադրանք ևն: Կենտրոնատեղին՝ Երևանում:

ՄԱՐԻԵԹ (Mariette) Օգյուստ Ֆերդինան (1821–1881), ֆրանսիացի եգիպտագետ, հնէագետ: Եգիպտ. թանգարանի հիմնադիրը Կահիրեում (1858): Պեղումներ է կատարել Թեբեում, Աբիդոսում, Մեմֆիսում և այլ ք-ներում:

ՄԱՐԻԵԹ (Marryat) Ֆրեդերիկ (1792–1848), անգլիացի գրող: «Փիթեր Սիմփլ» (1834), «Միչման Իզի» (1836) «ծովային» վեպերը սյուժետային թեմաներով առնչվում են նապոլեոնյան ժամանակաշրջանին: «Ամերիկյան օրագիր» (1838) վեպում քննադատել է ստրկատիրությունը: Հեղինակ է նաև մանկ. երկերի:

ՄԱՐԻԵՍ (Mariés) Լուի (1876–1958), ֆրանսիացի հայագետ, բանասեր: Հիսուսյան ուխտի, ՎԱտՄՄ ճեմարանի անդամ (1934-ից): Հեղինակ է «Ուսումնասիրություն Եզնիկի մոտ գոյություն ցույց

տվող մի քանի անունների և բայերի մասին» (1928), «Հայերենի ցոյական անցյալ կատարյալի և ստորադասականի կազմության մասին» (1931) հայագիտ. աշխ-ների: Թարգմանել և ձանոթագրել է Եզնիկ Կողբացու «Յաղագս Աստծոյ» («Եղծ աղանդոց») երկը:

ՄԱՐԻԽՈՒԱՆԱ (հայ. ժարգոնում՝ պլան, քոլ), ինդ. կանեփից ստացվող թմրանյութ: ՀՀ-ում օգագործումը պետականորեն արգելված է: Տես նաև *Հաշիշ*:

ՄԱՐԻԿՅԱՆ Աննա Գրիգորի (ծ. 1941), բալետի արտիստուհի: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1976): 1959-ից՝ ԵՕԲԹ-ի մենապարուհի (Ֆրիգիա՝ Ա. Խաչատրյանի «Սպարտակ», Էլյլի՝ Ս. Բալասանյանի «Էլյլի և Մեջնուն», Օդետտա-Օդիլիա՝ Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճը», ևն):

ՄԱՐԻԿՅԱՆ Գրիգոր Վասիլի (1950–2017), բեմանկարիչ: Հեղինակ է դիմանկարների («Ինքնանկար», 1994, ևն), բնանկարների («Ձմեռը Տաղկաձորում», 2010, «Աշտարակի ձորը», 2012, ևն), կոմպոզիցիաների («Հեծյալը», 2012, ևն), հեռուստաներկայացումների ձևավորումների (Վ. Սարոյանի «Քարանձավի բնակիչները», 1982, Ե. Չարենցի «Երևանի ուղղիչ տնից», 1991, ևն), գրքերի նկարազարդումների (Լեռ Կամսարի «Կարմիր օրեր», 2000, ևն):

ՄԱՐԻՆԵ ԵԿԵՂԵՅԻ, Սուրբ Մարիանե, Սուրբ Մարիամ, ճարտ. հուշարձան ՀՀ Աշտարակ ք-ի հս-արլ-ում: Կառուցվել է 1281-ին: Ներքուստ՝ խաչաձև, արտաքուստ ուղղանկյուն գմբեթավոր կառույց է: Ունի շեշտված վերձիգ համաչափություններ, ճակատների միանման, պարզ մշակում: Գմբեթի թմբուկը ներքուստ շրջանաձև է, արտաքուստ՝ տասանիստ: Ուշագրավ է հվ. խաչաթևի կտուրի զանգաշտարակը (1838):

ՄԱՐԻՆԵՅՈ (Մարինեյո ի Վիդաուռետա, Marinello y Vidaurreta) Խուան (1898–1977), կուրացի գրականագետ, հրապարակախոս, քաղ-հաս. գործիչ: ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1976): Հեղինակ է գրաքննադատ. հոդվածների, ուղեգրությունների, Խ. Մարտիի մասին աշխ-ների, «Ժամանակակիցներ: Նոթեր և հուշեր...» (1964) հուշագրության և այլ գործերի:

ՄԱՐԻՆԵՏՏԻ (Marinetti) Ֆիլիպո Տոմազո (1876–1944), իտալացի գրող: Ֆուտուրիզմի հիմնադիրը և տեսաբանը եվրոպ. գրկ-յան մեջ և արվ-ում («Ֆուտուրիզմի մանիֆեստներ», 1909–19): Հեղինակ է «Մաֆարկա ֆուտուրիստը» (1910) վեպի, նաև բանաստեղծությունների, պոեմների, ակնարկների, պիեսների: 1919-ից՝ Բ. Մուսոլինիի համախոհը:

«ՄԱՐԻՆԵՐ» (անգլ.՝ mariner – բառացի՝ նավազնաց), ամերիկ. ինքնաշխատ միջմայրցամաք. կայանները և դրանց մշակման ու արձակման ծրագրերը 1962–73-ին (արձակվել է 10 կայան)՝ Վեներայի, Մարսի, Մերկուրիի և տիեզ. տարածության ուսումնասիրման համար: Նախատեսված էին մոլորակները շրջանցելու և մոլորակակենտրոն ուղեծրեր դուրս գալու համար:

ՄԱՐԻՆՈ (Marino) Ջամբատիստա (1569–1625), իտալացի բանաստեղծ: Հեղինակ է «Ադոնիս» (1623, 20 երգ) առասպել. թեմայով պոեմի, «Քնարերգություն» (1608–14) ժող-ի, «Պարկապզուկ» (1620) հովվերգության, որոնք սկզբնավորել են բարոկկո ոճի մարինիզմ (Մ-ի անունով) ուղղությունը, նաև «Քարոզներ» (մաս 1–3, 1614) արձակ գործի, «Նամականի» (հրտ.՝ 1966) ժող-ի:

ՄԱՐԻՆՈՍՅԱՆ Մարատ Գուրգենի (1925–1991), ռեժ.: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1969): Պրոֆ. (1978): Հայկ. հեռուստաթատրոնի հիմնադիրներից: 1950–56-ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի ռեժ., 1956–73-ին՝ հայկ. հեռուստաստուդիայի գլխ. ռեժ. և տնօրեն, 1984–85-ին՝ ԵՊՀԹ գլխ. ռեժ. (Բ. Բրեխտի և Կ. Վայլի «Երեք գրոշանոց օպերա», 1965, Ժ. Անանյանի «Տաքսի, տաքսի», 1977, Բ. Լ. Վասիլևի «Իսկ արշալույսներն այստեղ խաղաղ են», 1985, ևն):

ՄԱՐԻՈՏ (Mariotte) Էդմ (1620–1684), ֆրանսիացի ֆիզիկոս, ֆիզիոլոգ: Աշխ-ները վերաբերում են մեխանիկային, օպտիկ. և ջերմ. երևույթներին: Առաջինն է նկարագրել (1668) աչքի ցանցաթաղանթի կույր բիծը: Հայտնաբերել է (1676) գազերի օրենքներից մեկը (*Բոյլ–Մարիոտի օրենքը*): Հետազոտել է հեղուկների շարժումը, լույսի դիֆրակցիան և այլ երևույթներ:

ՄԱՐԻՈՍ Գայոս (Marius Gaius, մ. թ. ա. 158/157–86), հռոմեացի զորավար, մ. թ. ա. 107, 104–101 (4 անգամ), 100 և 86-ին ընտրվել է *կոնսուլ*: 105-ին հաղթել է Նումիդիայի թագավոր Յուգուրթային, 102-ին ջախջախել է տևտոնների, 101-ին՝ կիմբրերի ցեղերին: Իրականացրած ռազմ. բարեփոխումներով սկսել է հռոմ. բանակը քաղաքաց. աշխարհազորից պրոֆեսիոնալի վերածելու գործընթացը: Եղել է *Սուլլայի* հակառակորդը:

ՄԱՐԻՈՍԻՄ ՎԻԿՏՈՐԻՆՈՍ (Marius Victorinus, մոտ 275–362-ից հետո), հռոմեացի հռետոր, մանկավարժ: Լատ. է թարգմանել Արիստոտելի, Պլատոնի, Պորփյուրի աշխ-ներից: Կյանքի վերջում ընդունել է քրիստոնեություն: Լատ. Արևմուտքում առաջինը նրա տրակտատներում է գործածվել «նորպլատոնականություն» հասկացությունը՝ Սբ Երրորդության քրիստ. ուսմունքի մշակումներում:

ՄԱՐԽՎԻՑԱ (Marchwitza) Հանս (1890–1965), գերմանացի գրող: 1933–46-ին՝ վտարանդի: Մասնակցել է Իսպանիայի քաղաքաց. կռիվներին (1936–39): Հեղինակ է Գերմանիայի բանվոր դասակարգի կյանքն ու պայքարը պատկերող «Էսսենի գրոհումը» (1930) վեպի, «Կումիակները» (1934–59) եռերգության:

ԳԴեմՀ ազգ. մրց. (1950, 1955, 1964):

ՄԱՐԿ (գերմ.՝ Mark), 1. դրամակշռային միավոր Հս. և Կենտր. Եվրոպայի մի շարք պետություններում: IX դ-ում կշիռը կազմել է 327,45 *գ* արծաթ, X–XIV դդ-ում առաջացել են տարածաշրջ. Մ-եր՝ Քյոլնի (233,856 *գ*) ևն: 1524-ին հաստատվել է որպես Հռոմ. սրբազան կայսրության գլխ. կշռաչափ: 2. Արծաթե մետաղադրամ XVI–XVIII դդ-ում Լյուբեկում, Համբուրգում, Վիսմարում, ապա՝ Դանիայում, Շվեդիայում, Ռիգայում ևն: 3. Գերմանիայի դրամ. միավորը: Ոսկե Մ. (1871–1914՝ 0,358 *գ*) հավասար է եղել 100 պֆենիգի: 1923-ին թողարկվել է ռենտային Մ., 1924-ից վերականգնվել է ոսկեարժեք թողարկումը (4,2 Մ.=1 ԱՄՆ դոլար, 1934-ից՝ 2,5 Մ. =1 ԱՄՆ դոլար): 1945–48-ին դրանք շրջանառել են միաժամանակ, այնուհետև՝ ԳԴեմՀ և ԳԴՀ Մ-երը (2002-ին փոխարինվել են *եվրոյով*): 4. Ֆինլանդիայի դրամ. միավորը (markka), շրջանառության մեջ է դրվել 1860-ին: 1963-ին սահմանվել է նոր Մ. (=100 հին Մ-ի), 2002-ին փոխարինվել է եվրոյով: 5. Լեհաստանի դրամ. միավորը՝ 1917–24-ին, Էստոնիայի դրամ. միավորը՝ 1918–28-ին:

ՄԱՐԿԱՋԻՏ, ճառագայթող հրաքար, միներալ, բնական ծծմբային երկաթի (FeS_2) բազմաձև տարբերակը: Գույնը՝ արայրի դեղին, փայլը՝ մետաղական: Կարծր.՝ 6–6,5, խտ.՝ 4,9 *գ/սմ*³: Օգտագործվում է ծծմբական թթու ստանալու համար:

ՄԱՐԿԱՐՈՎ, Իվան Քրիստափորի (Խաչատուրի, 1844–1931), զինվ. բժիշկ: Բժշկ. ծառայության գեն-լեյտ. (1904), գեն-համարզ: Պետ. խորհրդական (1897), ազնվական: 1874-ին՝ Կովկասի կայսեր. բժշկ. ընկ-յան (Թիֆլիս) իսկական անդամ: 1891–1903-ին՝ Կովկաս. հեծյալ, 1-ին կազակ., 18-րդ հրաձգ. դիվիզիաների և 14-րդ բանակ. կորպուսի բժիշկ: 1904-ին՝ Կովկաս. բանակ. կորպուսի գլխ. բժիշկ:

Սբ Ստանիսլավի III (1874) և II (1890), Սբ Աննայի III (1884), Սբ Վլադիմիրի IV (1890) աստիճանների շքանշաններ:

ՄԱՐԿԵԼԻՈՒՍ (Markelius) Սվեն (1889–1972), շվեդ ճարտ., քաղաքաշինարար: Ժամանակակից ճարտ. հայեցակարգերը համատեղել է ազգ. ճարտ-յան ավանդույթների հետ (Ժող. տունը՝ Լինչյոպինգում, 1954): Ստոկհոլմի գլխ. հատակագծի հեղինակն է:

ՄԱՐԿԻԱՆՈՍ (Marcianus, 392–457), Բյուզանդիայի կայսր՝ 450-ից: Իր ազդեցությանն է ենթարկել Վրաստանը, միջամտել նրա եկեղեց. ու քաղ. գործերին: Հրաժարվել է օգնել Սասանյանների դեմ 450-ին ապստամբած հայերին: 451-ին Մ-ի նախագահությամբ Քաղկեդոնում տեղի է ունեցել տիեզ. 4-րդ ժողովը (տես *Քաղկեդոնի ժողով 451*):

ՄԱՐԿԻՈՆ (Marcion, մոտ 85–մոտ 160), սինոպցի (Փոքր Ասիա) քրիստ. գնոստիկ: Մոտ 140-ից՝ Հռոմում: Հիմք ընդունելով Պողոս առաքյալի թղթերը՝ Մ. համարել է, որ Հին կտակարանի Արարիչ-Աստվածը, իր արդարության օրենքի սկզբունքով, և աստվածաշնչյան սիրո Աստվածը, Հիսուս Քրիստոսի հայտնությամբ, անհամատեղելի են: Մ-ի ուսմունքը համարվել է հերետիկոսություն (144), լայնորեն տարածվել է Հռոմ. կայսրությունում (V դ.), որոշակի ազդեցություն է թողել Պավլիկյան շարժման վրա:

ՄԱՐԿՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գնոստիկ. կրոնափիլ. ուսմունք, հերետիկոսություն քրիստոնեության մեջ: Առաջացել է II դ-ում *Մարկիոնի* վարդապետությունից: Տարածվել է հատկապես Հռոմում, Եգիպտոսում, Պաղեստինում, Ասորիքում, Հայաստանում: Մ-յան հիմն. սկզբունքները շարադրվել են Մարկիոնի «Հակաթեզեր» գրվածքում (չի պահպանվել): Ըստ Մ-յան՝ մարդկությանը չարից փրկելու համար Աստված արդեն երկիր է ուղարկել Քրիստոսին (Մեսիա):

Մ. ժխտել է Հին կտակարանը, Նոր կտակարանից սրբագրումներով ընդունել է միայն Ղուկասի Ավետարանը և Պողոս առաքյալի 1-ին 10 թղթերը: Մ. պաշտոնապես արգելվել է Հռոմ. կայսրությունում Կոստանդինոս Մեծի օրոք (306–337): Արևելքում գոյատևել է մինչև V դ-ի կեսը՝ աստիճանաբար ձուլվելով *մանիքեությանը*:

ՄԱՐԿՈ ՊՈԼՈ (Marco Polo, մոտ 1254–1324), իտալացի ճանապարհորդ, գրող: 1271–75-ին ծովով հասել է Փոքր Ասիայի ափեր, այնտեղից ցամաքով՝ Հս. Չինաստան, որտեղ մինչև 1292-ը ծառայել է Խուբիլայ

խանի մոտ: 1292–95-ին Հվ. Չինաստանից Իրանով վերադարձել է Վենետիկ: Մ. Պ-ի ուղևորությունների մասին պատմությունները գրի է առել բանտարկյալ Ռուստիչանոն: «Մարկո Պոլոյի գիրքը» (1298) երկը արժեքավոր աղբյուր է Հայաստանի, Վրաստանի, Իրանի, Չինաստանի, Մոնղոլիայի, Հնդկաստանի, Ինդոնեզիայի աշխարհագրության, ազգագրության, պատմության մասին:

ՄԱՐԿՈՆԻ (Marconi) Գուլելմո (1874–1937), իտալացի ռադիոճարտարագետ և ձեռնարկատեր, ռադիոյի գյուտարարներից: Իտալիայում, 1896-ից Մեծ Բրիտանիայում փորձեր է կատարել էլեկտրամագնիս. ալիքները գործնականում օգտագործելու համար: 1897-ին ստացել է անլար հեռագրության եղանակի հայտնագործման արտոնագիր: Նոբելյան մրց. (1909, Կ. Ֆ. *Բրաունի* հետ):

ՄԱՐԿՈՍ (I դ.), հրեա ավետարանիչ, Նոր կտակարանի՝ Մարկոսի Ավետարանի հեղինակը: Քրիստոսի 72 աշակերտներից: Մ. նույնացվում է այն պատանու հետ, որը Քրիստոսի ձերբակալման ժամանակ փախել է Գեթսեմանի այգուց, իսկ «Գործք Առաքելոց»-ում հիշատակվում է որպես «Հովհաննես, որ կոչվում է Մարկոս»: Մ. եղել է Պետրոս առաքյալի թարգմանիչը, Պողոսի և Բառնաբասի գործակիցներից: Մ. համարվում է Ալեքսանդրիայի ուղղափառ եկեղեցու հիմնադիր եպս.: Նահատակվել է: Մ-ի Ավետարանն անանուն է, այն անվանվել է եկեղեց. ավանդությամբ, ըստ որի՝ Քրիստոսի բոլոր պատգամները և գործերը Մ. գրի է առել Պետրոս առաքյալի փոխանցմամբ: Մ-ի մասունքները IX դ-ում Ալեքսանդրիայից տեղափոխվել են Վենետիկ:

ՄԱՐԿՈՍ, XIV դ-ի վերջի գրիչ, մանրանկարիչ՝ Ղրիմում: Առաջին անգամ հիշատակվում է 1370-ին Կաֆայում գրված մի ձեռագրի հիշատակարանում, որը ձեռագրի հետ ընդօրինակվել է 1669-ին (Մոնդ., ձեռ. № 150): 1374–1401-ին գրել և ընդօրինակել է մի քանի մատյաններ: Մ-ի պահպանված ձեռագրերը Մոնդ-ում են:

ՄԱՐԿՈՍ ԱՎԵԼԻՈՍ (Marcus Aurelius, 121–180), Հռոմի կայսր՝ 161-ից՝ ***Անտոնինոսների*** հարստությունից: 162–166-ի պատերազմում հաղթել է պարթևներին. 166-ի պայմանագրով Հռոմ. կայսրությանն է անցել Միջագետքի արմ. մասը, Հայաստանը ճանաչվել է անկախ, սակայն թագավորելու էին Հռոմի դրածոները: Ստոիկյան դպրոցի (տես ***Ստոիցիզմ***) ներկայացուցիչ էր: Հեղինակ է «Դատողություն», «Գիրք ոսկեղենիկ» երկերի:

ՄԱՐԿՈՍ ԵՔԵՍՈՍԱՑԻ (Մարկոս Եվգենիկոս, մոտ 1392–1445), բյուզանդացի աստվածաբան, Կ. Պոլսի ուղղափառ եկեղեցու եպս., հիմներգու, Եփեսոսի մետրոպոլիտ (1437-ից), ուղղափառ սուրբ: Ֆեռարայի և Ֆլորենցիայի ժողովներում քննադատել է կաթոլիկ աստվածաբանությունը: Հռոմի կաթոլիկ եկեղեցու հակառակորդների խմբի առաջնորդ: Հեղինակ է աստվածաբան., բանաստեղծ., քնար., ասկետ. և այլ ստեղծագործությունների:

ՄԱՐԿՈՍ ՊԱՏԿԵՐԱՀԱՆ, XVII դ-ի 2-րդ կեսի մանրանկարիչ: Աշխատել է Կ. Պոլսում և Էջմիածնում: 1651-ին պատկերազարդել է Հայսմավուրք, 1654–66-ին և 1686-ին՝ Աստվածաշունչ (Մաղաքիա Կոստանդնուպոլսեցու հետ, երեքն էլ՝ Մոնդ., ձեռ. № 1502, 348, 349), 1694-ին (որդու՝ Գաբրիել Պատկերահանի հետ)՝ «Սուտ Կալլիսթենեսի պատմությունը» (Վենն. մոնդ., ձեռ. № 319): Ձեռագրերից պահվում են նաև Երուսաղեմի և Էջմիածնի մոնդ-ներում:

ՄԱՐԿՈՍՅԱՆ Ալբերտ Օվկիանոսի (ծ. 1962), գյուղատնտես: Գղտ. գիտ. դ-ր (2015): Աշխ-ները վերաբերում են ՀՀ հողերի էրոզիայի դեմ պայքարի միջոցառումներին, հողապաշտպան ռեսուրսախնայող. երկրագործ. համակարգերին ևն:

ՄԱՐԿՈՍՅԱՆ Աշոտ Իշխանի (ծ. 1955), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դ-ր (2010), պրոֆ. (2015): Մշակել է կարբոֆուրան, կարբոսուլֆան ու դելտանիտ պեստիցիդների սինթեզի արդյունավետ եղանակներ և առաջարկել դրանց ստացման լաբորատոր կանոնակարգերը:

Քեմբրիջի համալսարանի «Տարվա մարդ» և ոսկե մեդալ (2002), «Գիտական գործընկերություն» միջազգ. ֆոնդի ոսկե մեդալ (2015): ՌԴՆԳԱ ակադ. (2013):

ՄԱՐԿՈՍՅԱՆ Աշոտ Խաչատուրի (ծ. 1957), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (1998), պրոֆ. (2001): ՀՀ Կառ-յանն առընթեր պետ. գույքի կառավարման նախարարի (2000–03), ապա՝ վարչության պետի (2003-ից) տեղակալ: Աշխ-ները վերաբերում են արդ-յան հյուղերի արդյունավետության, երկրորդային պաշարների գնահատման, բաժնետիր. ընկ-ների գործունեության, պետ. գույքի մասնավորեցման, հակամենաշնորհային քաղ-յան, պետության ու շուկայի փոխհարաբերության և այլ խնդիրների:

ՀՀ վարչապետի հուշամեդալ (2007):

ՄԱՐԿՈՍՅԱՆ Աշոտ Սուրենի (ծ. 1940), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1989), պրոֆ. (2001): ՄՊՀ մագնետիզմի հիմնախնդրային լաբորատորիայի առաջատար գիտաշխատող (1996-ից): Աշխ-ները վերաբերում են մագնիս. նյութերի ֆիզիկային, նյութի խտացված վիճակի մագնիսականությանը, մագնիսաառաձգականության երևույթներին, մագնիս. և կառուցվածք. ֆազային անցումներին, մագնիս. նյութերի տեխնոլոգիային:

ՄԱՐԿՈՍՅԱՆ Հակոբ Արտաշեսի (1904–1972), ֆիզիոլոգ և մանկավարժ: Կենսբ. գիտ. դ-ր (1954): ԽՍՀՄ ՄԳԱ ակադ. (1966): Եղել է ԽՍՀՄ բուժհրատի (1942–1948), ԽՍՀՄ ՄԳԱ ֆիզ. դաստիարակության և դպրոց. հիգիենայի, 1968–72-ին՝ Տարիքային ֆիզիոլոգիայի և ֆիզ. դաստիարակության ինստ-ների տնօրեն: Աշխ-ները վերաբերում են ԿՆՀ-ի ֆիզիոլոգիային, դպրոց. հիգիենային: Հեղինակ է ֆիզիոլոգիայի բուհ. դասագրքի:

ՄԱՐԿՈՍՅԱՆ Մկրտիչ (ծ. 1938), գրող, հրտ., խմբ.: 1993-ին Ստամբուլում հիմնադրել է ***«Արաս»*** հրտչ-յունը, տպագրում է հայ. և թուրք. գրքեր: Հեղինակ է «Մեր այդ կողմերը» (1984), «Կեավուր թաղ» (հայ.՝ 1992, թուրք., քրդ.՝ 2011) պատմվածքների ժող-ների, «Ասա՛, Մարկո՛ս, որտեղացի՛ ես» (1995), «Մեր տոմսը հատեց Ստամբուլը» (1998, երկուսն էլ՝ թուրք.), «Տիգրիսի ափերէն» (1999) գրքերի, «Համրիչի հատիկներ» (2006) հուշապատումի:

ՄԱՐԿՈՍՅԱՆ Միհր Վարդգեսի (ծ. 1954), տեղեկագիտ-յան, հաշվող. տեխնիկայի և կառավարման համակարգերի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (2010), պրոֆ. (2012): Երևանի կապի միջոցների ԳՀԻ տնօրեն (1992-ից): Աշխ-ները վերաբերում են հաշվող. տեխնիկային, ծրագրավորմանը, հեռահաղորդակցությանը, ավտոմատացված կառավարման համակարգերին, անտենաներին և անտեն. չափումներին, թվային էլեկտրոնիկային, հեռահաղորդակցության համակարգերին ու ցանցերին: Էլեկտրակապի միջազգ. միության փորձագետ (2017-ից): ՀԼԿԵՄ մրց. (1985):

ՄԱՐԿՈՍՅԱՆ Ստեփան Եղիազարի (1937–2015), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1990), պրոֆ. (1990): Աշխ-ները վերաբերում են գրաֆների տեսությանը և նրանց կիրառությանն էլեկտրոն. սարքավորումների (ԷՀՄ, Մեծ ինտեգրալ. սխեմաներ ևն) ինքնաշխատանախագծման մեջ: Մ-ի մշակած «միջակայքերի մեթոդը» և ալգորիթմները ԽՍՀՄ-ում կիրառվել են էլեկտրոն. սարքերի ֆիզ. փուլի ինքնաշխատ նախագծման համար:

ՄԱՐԿՈՍՅԱՆ Վրեժ Վարանցովի (ծ. 1950), գրահրտ.: 1997-ից՝ «Տիգրան Մեծ. հրատարակչության» գլխ. տնօրեն: 2012–17-ին՝ ՀՀ ԱԺ պատգմ.:

ՀԱԵ «Սբ Գրիգոր Լուսավորիչ» (2006), ԹՄՄ «Աղամանդակուռ Արարատ» (2007) շքանշաններ, ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալ (2012):

ՄԱՐԿՈՎ (Մարգարյան) Անատոլի Սերգեյի (1917–1958), կապիտան: ԽՄ հերոս (1944): 1939–56-ին ծառայել է ռազմածով. նավատորմում: Հերոսի կոչման արժանացել է սևծով. (Նովոռոսիյսկ, Կերչ, Ղրիմ) մարտ. գործողությունների ժամանակ ցուցաբերած խիզախության համար:

ՄԱՐԿՈՎ Գեորգի Մոկեևիչ (1911–1991), ռուս գրող, հաս. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1974, 1984): Հեղինակ է պատմահեղ. թեմայով «Ստրոգովներ» (գիրք 1, 2, 1939, 1946), Սիբիրի սոց. վերափոխմանը նվիրված «Երկրի աղը» (գիրք 1, 2, 1954, 1960), «Հայր և որդի» (մաս 1, 2, 1963, 1964), «Սիբիր» (գիրք 1, 2, 1969, 1973, հայ.՝ 1978) վեպերի:

ԽՍՀՄ Պետ. (1952), Լենինյան (1976) մրց-ներ:

ՄԱՐԿՈՎ Լեոնիդ Վասիլևիչ (1927–1991), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1985): Ռ. Վ. ***Մարկովայի*** եղբայրը: 1965-ից՝ Մոսկվայի Մոսսովետի անվ. թատրոնի (ընդհատումներով) դերասան (Պորֆիրի Պետրովիչ՝ «Պետերբուրգյան երազներ»՝ ըստ Ֆ. Մ. Դոստոևսկու, Ալեքսեյ Օլով՝ Լ. Գ. Զորինի «Արքայական որս», ևն): Նկարահանվել է «Ռուսական դաշտ», «Իմ սիրելի, քնքուշ գազան», «Գարաժ», «Եվ այս ամենը նրա մասին», «Կարմիրը և սևը» (վերջին երկուսը՝ հեռուստաֆիլմ) և այլ կինոնկարներում: ԽՍՀՄ Պետ. մրց. (1984):

ՄԱՐԿՈՎ Սոիսեյ Ալեքսանդրովիչ (1908–1994), ռուս ֆիզիկոս-տեսաբան: ՌԴԱ ակադ. (1966): Սոց. աշխ. հերոս (1978): Աշխ-ները վերաբերում են քվանտ. էլեկտրադինամիկային և տարր. մասնիկների ռեյլատիվիստ. դաշտի ոչ տեղային տեսություններին:

ՄԱՐԿՈՎԱ Ռիմա Վասիլևնա (1925–2015), ռուս. դերասանուհի: ՌԴ ժող. արտիստ (1994): Լ. Վ. ***Մարկովի*** քույրը: 1951–62-ին՝ Մոսկվայի Լենկոմի թատրոնի, 1971–92-ին՝ Կինոդերասանի թատրոն-ստուդիայի դերասանուհի: Նկարահանվել է «Թներ», «Կանանց թագավորությունը», «Քաղցր կին», «Իսկ մեզ մոտ լռություն է», «Եգոր Բուլըչովը և ուրիշները», «Գիշերային

պահակախումբ», «Ցերեկային պահակախումբ», «Տարվա եղանակներ» (հեռուստաֆիլմ) և այլ կինոնկարներում:

ՄԱՐԿՈՎԻՑ (Markowitz) Հարրի (ծ. 1927), ամերիկացի տնտեսագետ: Աշխ-ները վերաբերում են ֆին. շուկաների գործառնության խնդիրներին (պորտֆելային ընտրության տեսություն, կորպորացիաների գործառնության հարցեր ևն):

Նոբելյան մրց. (1990, Մ. *Միլլերի* և Ու. *Շարպի* հետ):

ՄԱՐԿՈՎՆԻԿՈՎ, Վլադիմիր Վասիլևիչ (1837–1904), ռուս քիմիկոս, գիտ. դպրոցի հիմնադիր: Ա. Մ. *Բուտլերովի* աշակերտը: Աշխ-ները վերաբերում են քիմ. կառուցվածքի տեսության զարգացմանը: Բացահայտել է (1865) իզոմերիայի երևույթը ճարպաթթուների շարքում, սահմանել մի շարք օրինաչափություններ տեղակալման, միացման (տես *Մարկովնիկովի կանոն*) և քայքայման ռեակցիաների վերաբերյալ: Ուսումնասիրել է (1880) կովկասի նավթը, հայտնաբերել է ածխաջրածինների նոր դաս՝ նավթեններ: Նպաստել է ռուս. քիմ. արդ-յան զարգացմանը: Ռուս. քիմ. ընկ-յան հիմնադիրներից է (1868):

ՄԱՐԿՈՎՆԻԿՈՎԻ ԿԱՆՈՆ, ոչ համաչափ օլեֆիններին հալոգենաջրածինների կամ ջրի միացման կարգը որոշող օրինաչափություն. ջրածնի ատոմը միանում է ածխածնի առավել հիդրված ատոմին, իսկ հալոգենի ատոմը կամ հիդրօքսիլ խումբը՝ քիչ հիդրված ատոմին: Սահմանել է Վ. Վ. *Մարկովնիկովը* (1869-ին): Զուգորդված կրկնակի կապեր և էլեկտրաբացասական խումբ պարունակող միացություններին էլեկտրա- և նուկլեոֆիլ նյութերի միացումը տեղի է ունենում հակառակ Մ. կ-ի:

ՄԱՐԿՎԱՐՏ (Markwart) Յոզեֆ (1864–1930), գերմանացի արևելագետ, հայագետ, բանասեր, լեզվաբան, աշխարհագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1893): Զբաղվել է կովկասագիտ-յամբ, իրանագիտ-յամբ, հայագիտ-յամբ: Հեղինակ է «Երանշահրն ըստ կեղծ Մովսես Խորենացու Աշխարհացույցի» (1901), «Վրական Բագրատունեաց ծագումը», «Պատմութիւն հայերէն նշանագրերու եւ վարուց Ս. Մաշթոցի», «Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը» (երեքն էլ՝ հայ., 1913), «Հայ ազգի ծագումը և վերականգնումը» (1919), «Հարավային Հայաստանը և Տիգրիսի ակունքները՝ ըստ հույն և արաբ աշխարհագիրների» (1930), «Հայ եպիսկոպոսությունների ծագումը» (1932) և այլ աշխ-ների: Հայ. է թարգմանել իր անուն-ազգանունը, երբեմն ստորագրել «Հովսեփ Բդեշխյան»:

Լազարյան ճեմարանի մրց. (1905):

ՄԱՐԿՈՒԶԵ (Marcuse) Հերբերտ (1898–1979), գերմանացի փիլ. և սոցիոլոգ: 1934-ից՝ ԱՄՆ-ում: Ըստ Մ-ի («Միաչափ մարդը», 1964)՝ զարգացած կապիտալիստ. հասարակարգը հակադիր ուժերի ինտեգրացման հետևանքով դարձել է սոցիալ. ամբողջություն, որի պատճառով բանվոր դասակարգը կորցրել է իր հեղ. դերը: Երիտասարդության բուռն հուզումների շրջանում (1968) Մ. դարձել է Արևմուտքի ձախ արմատականների ու ծայրահեղականների հոգևոր հայրը:

ՄԱՐԿՈՒՇԵՎԻՉ Ալեքսեյ Իվանովիչ (1908–1979), ռուս մանկավարժ, մաթեմատիկոս, գրքագետ, մատենագետ: ՌԽՖՍՀ (1950, փոխնախագահ՝ 1950–58, 1964–66-ին) և ԽՍՀՄ (1966, փոխնախագահ՝ 1966–75-ին) ՄԳԱ ակադ.: 1958–64-ին՝ ՌԽՖՍՀ լուսավորության փոխնախարար: Ուներ խանձարուրային գրքերի բացառիկ հավաքածու (75 անուն գիրք և 61 պատառիկ) և հարուստ գրադարան (այժմ՝ Ռուս. պետ. գրադարանում): Հեղինակ է փոփոխ. մեծության տեսության, մաթ-ի դասավանդման մեթոդիկայի, գիտ-յան պատմության վերաբերյալ աշխ-ների:

ՄԱՐԿՈՒՍ (Marcus) Ռուդոլֆ Արթուր (ծ. 1923), ամերիկացի ֆիզքիմիկոս (ծագումով՝ կանադացի): Քիմ. գիտ. դ-ր (1946): Աշխ-ները վերաբերում են էլեկտրոնի տեղափոխմամբ քիմ. ռեակցիաների մեխանիզմներին (Մ-ի տեսություն):

ԱՄՆ-ի ազգ. գիտ. մեդալ (1989), Վոլֆի հիմնադրամի (1984/85, Իսրայել), Նոբելյան (1992) մրց-ներ:

ՄԱՐՄԱՇԵՆԻ ՎԱՆՔ, ճարտ. համալիր ՀՀ Շիրակի մարզի Վահրամաբերդ գ-ից 2 *կմ* հվ-արլ.՝ Ախուրյան գետի ափին: Բաղկացած է Մեծ և Փոքր (Վերին) հուշարձաններից: Վանքի գլխ.՝ Կաթողիկե եկեղեցին կառուցել է Վահրամ Պահլավունին 988–1029-ին (Անիի դպրոցի լավագույն կառույցներից է, հեղինակ՝ հավանաբար՝ *Տրդատ*): 2-րդը փոքրացված կրկնօրինակն է՝ հս-ից, 3-րդը կից է հվ-ից, 4-րդը բացվել է 1954–56-ի պեղումներով: Փոքր (Վերին) վանքը Մեծ վանքից հս՝ բլրի վրա է. պահպանվել են եկեղեցու ավերակները: 1923-ից Կաթողիկե եկեղեցին չի գործել, 1988-ի երկրաշարժից վնասվել է:

ՄԱՐՄԱՐ, միջին կարծրության փոխակերպային ապար. կազմված է զուտ կալցիտից՝ $CaCO_3$, որոշ տեսակներ՝ առավելապես դոլոմիտից: Սովորաբար պարունակում է նաև այլ միներալներ (գրաֆիտ, հեմատիտ, լիմոնիտ, պիրիտ, քվարց ևն), որոնցով պայմանավորված է Մ-ի գույնը: Առաջանում է կրաքարի կամ դոլոմիտի ուժաջերմ. փոխակերպման, վերաբյուրեղացման հետևանքով:

ՀՀ-ում Մ-ի հանքավայրերը պալեոզոյան շերտախմբերում և մինչքեմբրի փոխակերպ. ապարներում են: Բարձրորակ Մ-ի հանքավայրեր կան Կոտայքի (Արզական, Աղվերան գ-եր), Արարատի (Մարմարաշեն, Խոր վիրապ), Սյունիքի (Քաջարան ք.) մարզերում: Հայտնի են նաև Իջևանի, Վարդենիսի, Ապարանի հանքավայրերը: ՀՀ-ում Մ-ի հաշվարկված պաշարները մի քանի մլն u^3 են: Հայկ. Մ-ները զեղազարդիչ են, ունեն տեխ. և շին. բարձր հատկություններ: Հնուց ի վեր օգտագործվում է շին-յան և քանդ-յան մեջ:

«ՄԱՐՄԱՐԱ», ազգ., հաս-քաղ., գր. օրաթերթ (1940-ից, Ստամբուլ): Խմբ-ներ՝ Պետրոս Զոպյան, Սուրեն Շամլյան, Էդվարդ Սիմքեշյան, Կարպիս Սուրադյան, Ռոպեր Հատտեճյան (1968-ից):

ՄԱՐՄԱՐԱ ԾՈՎ, (թուրք.՝ Marmara, անվանումն ստացել է նույն ծովի՝ սպիտակ մարմարի հարուստ պաշարներով համանուն կղզուց), Ատլանտ. օվկ-ի միջերկր. ծով՝ Եվրոպայի և Փոքր Ասիայի միջև: Բոսֆորի և Դարդանելի նեղուցներով միանում է Սև և Էգեյան ծովերին: Մակերեսը՝ 12 հզ. *կմ²*, խոր.՝ մինչև 12 *մ*: Մ. ծ-ով են անցնում Սև և Միջերկր. ծովերի հաղորդակցության կարևոր ուղիները, հս. ափին է Ստամբուլը:

ՄԱՐՄԱՐԵ ԲԶԵԶ, թերթաբեղիկավորների ընտանիքի բզեզ: Խաղողի վազի և լայնատերև բնափայտ. ցեղերի վնասատու Եվրոպայում: Սև, գորշ կամ կարմրագորշ բզեզ է՝ մարմարանման նախշերով: Երկ.՝ մինչև 40 *մմ*: Մնվում է տերևներով, թրթուրները՝ արմատներով:

ՄԱՐՄԱՐԵ ՄՐՏԻՄ (Marmoronella angustriostis), *բաղերի* ընտանիքի ջրլող թռչուն: Բնադրող–չվող է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 39–42, թևերի բացվածքը՝ 63–67 *սմ*, կ. զ.՝ 0,4–0,6 *կգ*: Հանդիպում է զույգերով կամ փոքր խմբերով: Ապրում է փոքր լճակներում, ափամերձ փարթամ բուսականությամբ ճահճուտներում, ՀՀ-ում տարածված էր Արարատյան դաշտի ճահճուտներում, ձկնաբուծ. տնտ-յունների ջրավազաններում, սակայն 2000-ից ի վեր չի գրանցվել: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՄԱՐՄԱՐԻԿ, գետ ՀՀ Կոտայքի մարզում, Հրազդանի աջ վտակը: Սկիզբ է առնում Փամբակի լ–շղթայի հվ. լանջերից՝ 2520 *մ* բարձր–ից: Երկ.՝ 37 *կմ*, ավազանը՝ 427 *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 5, 4 *մ³/վ*, առլճն՝ 87 *մ³/վ*, հոսքը՝ 170 մլն *մ³*: Մնումը հալոցքային (55 %) և ստորերկրյա (27 %) է, վարարումը՝ գարնանը, որի ընթացքում ձևավորվում է տարեկան հոսքի 74 %-ը: Գետահովիտն ունի ռեկրեացիոն մեծ հնարավորություններ, գործում է ամառ. հանգստյան տների համալիր: Մ-ի հովտում են «Հանքավան» ջրի ելքերը:

ՄԱՐՄԱՐՅԱՆ Գայանե Յուրիի (ծ. 1973), անասնաբույծ: Կենսբ. գիտ. դ-ր (2015): Յուրի *Մարմարյանի* դուստրը Աշխ-ները վերաբերում են մանր եղջերավոր կենդանիների ազոտ. փոխանակության տեսակ. և միջցեղ. առանձնահատկություններին:

ՄԱՐՄԱՐՅԱՆ Յուրի Գիգոլի (ծ. 1942), անասնաբույծ: Գղտ. գիտ. դ-ր (1997), պրոֆ. (1993): Գայանե *Մարմարյանի* հայրը: ՀԱԱՀ պրոռեկտոր՝ 1994-ից: Մ-ի ղեկավարությամբ ՀՀ-ում բուծել են ոչխարների կիսանրբագեղմ, կրոսբրեդային բրդածածկով, կորիդել տիպեր: Աշխ-ներ է կատարել ոչխարի ցեղերի գենոֆոնդի պահպանման, կատարելագործման, կաթնային այծաբուծության զարգացման ուղղություններով: Բարձրագույն դպրոցի գիտ-յան միջազգ. ակադ-ի անդամ (1997):

ՀՀ «Անանիա Շիրակացի» (2002), ԿԳՆ (2005) և ՀԱԱՀ ոսկե մեդալներ:

ՄԱՐՄԻՆ, 1. (ֆիզ.) տարածության որոշակի մասը գրավող մատերիա, նյութ, առանձին առարկա տարածության մեջ: 2. (Մաթ.) տարածության ցանկացած սահմանափակ մաս՝ իր սահմանով հանդերձ (օր.՝ գունդ, պրիզմա ևն): 3. Մարդու մարմնակազմի մի մասը՝ պարանոցից մինչև ոտքերը՝ իրանը: 4. (Տեխ.) մեքենայի, մեխանիզմի հիմն. մասը, օր.՝ իրանը, ևն:


ՄԱՐՄՆԱԿԱՆ ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ, *սոմատիկ նյարդային համակարգ* (հուն.՝ soma – մարմին), կենդանիների և մարդու նյարդ. համակարգի բաժին, որը առբերող (աֆերենտ) և արտատար (էֆերենտ) շարժիչ նյարդաթելերի ամբողջություն է. նյարդավորում է մկանները (ողնաշարավորների՝ կմախքային), մաշկը, հոդերը:

«ՄԱՐՄՆԱՄԱՐԶ», մարզ. հանդես (1911–14, Կ. Պոլիս): Խմբ-հրտ.՝ Շավարշ Քրիսյան:

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ, առողջությունն ամրապնդող և ֆիզ. ներդաշնակ զարգացմանը նպաստող հատուկ ֆիզ. վարժությունների ու մեթոդ. հնարքների համակարգ: Տարբերում են Մ-յան հիմն.

(ներառյալ հիգիենև. և աթլետիկ.), կիրառ. (այդ թվում՝ արտադր. տեսակներ), մարզ., գեղ. Մ., ***մարզական ակրոբատիկա***:

ՄԱՐՄՆԱՅԻՆ ԱՆԿՅՈՒՆ, որոշակի կոնական մակերևույթով սահմանափակված տարածության մաս (նկ. 1), մասնավորապես՝ եռանիստ (նկ. 2) և բազմանիստ (նկ. 3), որոնց անկյունները սահմանափակված են, համապատասխանաբար, 3 և բազմաթիվ հարթ նիստերով, որոնք զուգամիտվում են Մ. ա-յան գագաթում: Մ. ա-յան չափման միավորը՝ ***ստերադիան***:



ՄԱՐՄՆԻ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ, մարդու և կենդանիների օրգանիզմի ջերմ. վիճակի ցուցանիշ. արտացոլում է օրգանիզմի ջերմարտադր-յան և ջերմափոխանակության հարաբերակցությունը շրջակա միջավայրի հետ: Սառնարյուն կենդանիների Մ. ջ. անկայուն է և մոտ է շրջակա միջավայրի ջերմաստիճանին, տաքարյուններինը (այդ թվում՝ մարդունը) գործնականորեն կայուն է յուրաքանչյուր տեսակի համար: Տաքարյուն կենդանիներից առավել բարձր Մ. ջ. ունեն թռչունները (40–41ºC), կաթնասուններինը 32–39ºC է, մարդունը՝ 36–37ºC:

ՄԱՐՅԱՆ (Կարապետյան) Յուրի Մարտինի (1924–1976), արձակագիր, լրագրող: Եղել է միութ. «Կոմսոմոլսկայա պրավդա» (ռուս.), «Լիտերատուրնայա գազետա» (ռուս.), «Սովետսկայա կուլտուրա» (ռուս.) թերթերի սեփ. թղթակիցը: Հեղինակ է «Հանդիպումներ եթերում» (1959), «Ես՝ պատանի պիոներս» (1952) վիպակների, «Մեր Նազանին» (1960), «Հրազդանը երեկ, այսօր, վաղը» (1962) գրքերի:

ՄԱՐՅԱՆ (Մելիք-Քալանթարյան) Սեդա Ռուբենի (1923–2006): ՀԽՍՀ վաստ. արտիստ (1967): ԵԵԿՄԹ դերասանուհի (Երանյակ՝ Ա. Այվազյանի «Ատամնաբույժն արևելյան», Սաֆֆի՝ Յ. Շտրաուս-որդու «Գիչունների բարոն», Երազիկ՝ Ս. Զրրաշյանի «Երազիկ», Օդետա, Սիլվա՝ Ի. Կալմանի «Բայադերա», «Սիլվա», ևն):

ՄԱՐՇԱԼ (Marshall) Ալան (1902–1984), ավստրալիացի գրող: Հեղինակ է «Սա իմ ժողովուրդն է» (1944) ճամփորդ. նոթերի, «Մենք էլ այդպիսի մարդիկ ենք» (1948) բնիկների մասին ակնարկների ժող-ի, «Ի՞նչ գեղեցիկ են քո ոտքերը» (1949) վեպի, «Ես կարող եմ թռչել ջրափոսերի վրայով» (1955), «Սա խոտ է, որ աճում է ամենուր» (1962), «Իմ սրտում» (1963) ինքնակենսագր. եռերգության, նաև նովելների:

ՄԱՐՇԱԼ Ալֆրեդ (1842–1924), անգլիացի տնտեսագետ, քաղաքատնտ-յան քեմբրիջյան դպրոցի հիմնադիրը: Թագավոր. տնտեսագիտ. ընկ-յան կազմակերպիչներից (1890): Նրա «Քաղաքատնտեսության սկզբունքները» աշխ-ը երկար տարիներ եղել է տնտեսագիտ-յան տեսության հիմն. դասագիրքը Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում:

ՄԱՐՇԱԼ Բարրի (ծ. 1951), ավստրալիացի բժիշկ և մանրէաբան: Հայտնագործել է Helicobacter pylori բակտերիան, որն առաջացնում է ստամոքսի բորբոքում և խոց: Նոբելյան մրց. (2005, Ջ. Ռ. ***Ուորրենի*** հետ):

ՄԱՐՇԱԼ Թոմաս Հեմֆրի (1893–1981), բրիտանացի սոցիոլոգ: Ուսումնասիրել է XVIII–XX դդ-ում Մեծ Բրիտանիայում քաղաքացիության ինստիտուցիոնալ զարգացումը և նրա ձևավորմանն ուղեկցող «քաղաքացիական մշակույթն» ու «թույլատրելի հավասարության և արդարության» սոցիալ. համակարգը:

ՄԱՐՇԱԼ Ջորջ Քեթլետ (1880–1959), ԱՄՆ-ի պետ., ռազմ. գործիչ, բանակի գեն. (1944): ԵՀՊ-ի ժամանակ եղել է ամերիկ. բանակի շտաբի պետ: 1947–49-ին՝ ԱՄՆ-ի պետ. քարտուղար, 1950–51-ին՝ պաշտպան նախարար: Գործուն մասնակցություն է ունեցել «***Տրումենի դոկտրինա***»-ի և «***Մարշալի պլան***»-ի մշակմանը: Խաղաղության Նոբելյան մրց. (1953):

ՄԱՐՇԱԼ (ֆրանս.՝ maréchal, < հին վերին գերմ. marah – ձի և scale – ծառա, ձիապան), 1. պալատ. կոչում միջնադար. Ֆրանսիայում, XIII դ-ից՝ զինվ. կոչում: 2. Բարձրագույն զինվ. կոչում մի շարք երկրների բանակներում (XVI դ-ից՝ Ֆրանսիայում): Ավստրիայում, Պրուսիայում և Ռուսաստանում (մինչև 1917-ը) Մ. համապատասխանել է գեն-ֆլդմ-ին: 3. Լեհաստանում քաղաքաց. որոշ պաշտոնների կոչում (Սեյմի Մ. ևն): Արևմտահայ-ում Մ-ի հոմանիշն է մարաջախտը: 5 հայ զորավարներ արժանացել են ԽՍՀՄ Մ-ի կոչման:

«ՄԱՐՇԱԼԻ ՊԼԱՆ», ԵՀՊ-ից հետո Եվրոպայի վերականգնման և զարգացման ծրագիր՝ ԱՄՆ-ի տնտ. օգնությամբ: Գաղափարն առաջ է քաշել Ջ. ***Մարշալը*** 1947-ին (ուժի մեջ է մտել 1948-ի ապրիլին): Իրագործմանը մասնակցել են 17 եվրոպ. երկրներ՝ ներառյալ Արմ. Գերմանիան: 1951-ին փոխարինվել է «անվտանգության փոխադարձ ապահովման» օրենքով, որը նախատեսում էր տնտ. և ռազմ. օգնություն:

ՄԱՐՇԱԼՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ, ***Մարշալյան Կղզիների Հանրապետություն*** (Pepublic of Marshall Islands), պետություն Խաղաղ օվկ-ի համանուն կղզեխմբում (Միկրոնեզիա): Տարածքը՝ 181 *կմ²,* բն.՝ 53,16 հզ. (2011): Մայրաքաղաքը՝ ***Մաջուրո***: Պետ. լեզուն՝ անգլ.: Կառավարման ձևը՝ նախագահահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը: Բնակչության մեծ մասը բողոքական է: Բաժանված է 33 մունիցիպալիտետի: Անդամակցում է ՄԱԿ-ին: Զարգացող երկիր է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 2,5 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է կոպրա, կոկոսի յուղ, ձուկ ևն, ներմուծում՝ նավթամթերք, քիմիկատներ, մեքենաներ և սարքավորումներ, դեղորայք, սննդամթերք, հագուստ ևն: Դրամ. միավորը՝ ԱՄՆ դոլար:

1526-ին Բոկակ ատոլը հայտնագործել է իսպանացի ծովագնաց Ալոնսո դե Սալասարը: Հետագայում Մ. Կ. եղել են տարբեր տերությունների (1886-ից՝ Գերմանիայի, 1914-ից՝ Ճապոնիայի) գաղութը: 1947-ին ԱՄՆ-ի հովանավորությամբ ընդգրկվել է ՄԱԿ-ին ենթակա տարածքների կազմի մեջ: Որպես պետ. կազմավորում՝ առաջացել է 1983-ին՝ ՄԱԿ-ի Խնամակալ. խաղաղօվկիանոս. կղզիների բաժանման արդյունքում: 1986-ից ԱՄՆ-ի հետ «ազատ ասոցացման» մեջ է: 1990-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը լուծարել է կղզիների խնամակալության համաձայնագիրը և ճանաչել նրանց պետ. ինքնիշխանությունը:

ՄԱՐՇԱԿ Սամուիլ Յակովլևիչ (1887–1964), հրեա ռուսագիր բանաստեղծ, թարգմանիչ: Հեղինակ է բանաստեղծությունների («Գինվորական փոստը», 1944, հայ.՝ 1947, «Այն տունը, որ մի օր շինեց Զեկոն», հայ.՝ 1946, «Ընտիր լիրիկա», 1962) ժող-ների, հուշագրությունների («Կյանքի սկզբին», 1960, ևն), հեքիաթների («Կատվի տունը», 1922, ևն), պիեսների («Տասներկու ամիսներ», 1943, ևն) և այլ գործերի: Թարգմանել է Ռ. Բյոռնսի, Վ. Շեքսպիրի, Հ. Թումանյանի և ուր. գործերից: Հայ. հրատարակվել է նաև «Մանուկներին» (1953) բանաստեղծությունների ժող-ը:

ԽՍՀՄ Պետ. (1942, 1946, 1949, 1951), Լենինյան (1963) մրց-ներ:

ՄԱՐՈԿԿՈ, **Մարոկկոյի թագավորություն** (արաբ.՝ Ալ-Մամլյակա ալ-Մազրիբիա), պետություն Աֆրիկայի հս-արմ-ում: Սահմանակից է Ալժիրին և Արմ. Սահարային: Տարածքը՝ 446,5 հզ. *կմ²,* բն.՝ 31,85 մլն (2014): Մայրաքաղաքը՝ ***Ռաբաթ***: Պետ. լեզուն՝ արաբ.: Կառավարման ձևը՝ սահմանադր. միապետություն: Պետության գլուխը թագավորն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը (Ներկայացուցիչների և Խորհրդականների պալատներ): Հավատացյալների մեծ մասը սուննի մահմեդական է: Բաժանված է 14 վարչ. մարզերի: Անդամակցում է ՄԱԿ-ին, ԱՊԼ-ին, Աֆրիկ. միությանը ևն: Զարգացող երկիր է՝ բազմաճյուղ տնտ-յամբ: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 4,6 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է ավտոմեքենաներ, պարարտանյութ, հագուստ, էլեկտրատեխնիկա, հանքանյութ, նավթամթերք, ցիտրուս. մրգեր ևն, ներմուծում՝ նավթ, կապի միջոցներ, բնական գազ, պլաստմասսաներ, ցորեն ևն: Դրամ. միավորը՝ մարոկկոյական դիրհամ:

Հնագույն ժամանակներից Մ-ի տարածքում բնակվել են լիբիական կամ հիներերեր. (ժամանակակից բերբերների նախնիները) ցեղեր: Մ. թ. ա. II հզ-ամյակի վերջին առափնյա շրջաններում առաջացել են փյունիկեցիների գաղութներ, որոնք այնուհետև ընկել են Կարթագենի իշխանության տակ: Մ. թ. ա. II դ-ում Մ-ի հս. շրջանները Հռոմն իր ազդեցությանն է ենթարկել, իսկ մ. թ. ա. 27-ին նվաճել: Մ. թ. V դ-ում Մ-ի տարածքի հս. մասը նվաճել են վանդալները, VI դ-ում՝ Բյուզանդիան, VIII դ-ում՝ արաբները (տարածել են արաբ-ն ու մահմեդականությունը): 788-ին Մ-ի հս-արմ-ում հիմնադրվել է Իդրիսյանների պետությունը (առաջին պետությունը Մ-ի տարածքում՝ տեղի արաբ. դինաստիայի գլխավորությամբ), XI դ-ում՝ Ալմորավյանների, ապա՝ Ալմոհադների խալիֆությունը: XIII–դ-ի 2-րդ կեսին Մ-ում իշխանությունն անցել է Մարինյանների բերբեր. հարստությանը: XV դ-ում սկսվել է եվրոպացիների մուտքը Մ., պորտուգալացիներն ու իսպանացիները գրավել են ատլանտ. ծովափը: XVI դ-ի վերջին մարոկկոցիներին հաջողվել է գաղութարարներին վտարել առափնյա քաղաքների զգալի մասից: XIX դ-ի 40-ական թթ-ից սկսվել է եվրոպացիների զինված ներխուժումը Մ.: 1912-ին ստորագրված ֆրանս-մարոկկոյական և ֆրանս-իսպ. պայմանագրերով Մ-ի տարածքը բաժանվել է 3 գոտու՝ ֆրանս. (Մ-ի տարածքի մեծ մասը), իսպ. (մի փոքր

տարածք Մ–ի հս–ում և ծայր հվ–ում, որը Իսպ. Հվ. Մ. անունով միացվել է Իսպ. Արմ. Սահարային) և միջազգ. (Տանժեր ք.): 1934–ին ստեղծվել է Ազգ. գործողության մարոկկոյական դաշինքը, որը պահանջել է մարոկկոցիների մասնակցությունը երկրի կառավարմանը: 1956–ի մարտին նախկին ֆրանս. Մ. հռչակել է անկախություն, նույն տարում միասն. պետությանն են միացել իսպ. հատվածն ու Տանժերը: 1980–ական թթ–ի վերջերից երկրում ուժեղացել է մահմեդ. արմատականությունը: 1996–ին ընդունվել է նոր սահմանադրություն: 2000–ական թթ–ից Մուհամեդ VI թագավորի նախաձեռնությամբ իրականացվում են քաղ. բարեփոխումներ՝ ժողովրդավար. պետություն ստեղծելու համար:

Հայերը Մ–ում հաստատվել են հիմնականում Մեծ եղեռնից, իսկ որոշ ընտանիքներ՝ նաև ԵՀՊ–ից հետո: 1956–ին Մ–ում բնակվել է շուրջ 400 հայ, հիմնականում՝ Կասաբլանկա և Ռաբաթ ք–ներում: 1951–ին Կասաբլանկայում են հաստատվել Սողոմոն Թեհլերյանը, Դանիել Վարուժանի այրին՝ Արաքսի Վարուժանը, և ուր.: Կասաբլանկայում կա հայկ. փողոց, ներկայում բնակվում է 25–30 ընտանիք: Իշխանությունները համայնքը ճանաչել են ինքնավար:

ՄԱՐՈԿԿՈՅԱԿԱՆ ՄՈՐԵԽ, իսկական մորեխների ընտանիքի միջատ, վայրաճ և մշակովի բույսերի վնասատու է: Շիկադեղնավուն է՝ մուգ բծերով և բաց գույնի խաչաձև նախշով, երկ.՝ 20–38 *մմ*: Տես նաև *Մորեխներ*:

ՄԱՐՈԿԿՈՑԻՆԵՐ (ինքնանվանումը՝ մագարիբա), 1. *Մարոկկոյի* բնակչությունը: 2. **Մարոկկոյի արաբներ**, Մարոկկոյի հիմն. բնակչությունը (20 մլն, 2010): Ապրում են նաև Սուդանում (ավելի քան 300 հզ.), Ալժիրում (200 հզ.), Ֆրանսիայում (1 մլն), Իսպանիայում (500 հզ.) ևն: Ընդհ. թիվը՝ շուրջ 22 մլն: Խոսում են արաբ–ի մարոկկոյական բարբառով: Հիմնականում սուննի մահմեդական են:

ՄԱՐՈՂ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐ, *սեփական պատրանումներ*, որոնց լայնույթը ժամանակի ընթացքում նվազում է էքսպոնենտային կանոնով: Մեխ. Մ. տ–ի համար դա կատարվում է մածուցիկ շփման ուժերի, իսկ էլեկտրամագնիս. Մ. տ–ի համար՝ օհմային դիմադրության պատճառով:

ՄԱՐՈՆԱԿԱՆՆԵՐ, արլ–քրիստ. եկեղեցու հետևորդներ: Մ–ի համայնքները ձևավորվել են V–VII դդ–ում Սիրիայում: Հիմնականում ապրում են Լիբանանում, Եգիպտոսում, Սիրիայում և այլուր: Մարոն. եկեղեցու ներկայացուցիչը կրում է Անտիոքի մարոն. պատրիարքի տիտղոսը (նստավայրը՝ Լիբանանի Բկիրկի ք–ում): 1943–ից Լիբանանում ձևավորված կարգի համաձայն Մ–ին է վերապահված երկրի նախագահի պաշտոնը:

ՄԱՐՈՎ Միխայիլ Յակովլևիչ (ծ. 1933), տիեզ. հետազոտությունների բնագավառի ռուս գիտնական: ՌԳԱ ակադ. (2008): Աշխ–ները վերաբերում են երկն. մարմինների գազ. թաղանթներին, տիեզ. սարքերով Արեգակն. համակարգի ուսումնասիրություններին, բնական միջավայրերի մաթ. մոդելավորմանը:

Լենինյան (1970), ԽՍՀՄ Պետ. (1980) մրց–ներ:

ՄԱՐՉ (March) Ֆրեդրիկ (Էռնեստ Ֆրեդերիկ Մակ–Ինթայր Բիքել, 1897–1975), ամերիկացի կինոդերասան: Նկարահանվել է «Դոկտոր Ջեքիլը և միստր Հայդը», «Մեր կյանքի լավագույն տարիները», «Յոթ օր մայիսին», «Նյուրնբերգյան դատավարություն» և այլ ֆիլմերում:

«Օսկար» (1932, 1947), «Ոսկե գլոբուս» (1952) և այլ մրց–ներ:

ՄԱՐՉԵՆԿՈ Անատոլի Տիխոնովիչ (1938–1986), ռուս գրող: Հեղինակ է հետստալինյան շրջանի ճամբարներում ամբողջատիրության դեմ անհատի դիմակայությանը վերաբերող «Իմ ցուցմունքները» (1968), «Տարուսայից մինչև Չունա» (1976), «Ապրի՛ր, ինչպես բոլորը» (1987, անավարտ) հուշագր–փաստագր. գրքերի: 5 անգամ դատվել է քաղ. մեղադրանքներով, մոտ 19 տարի անցկացրել կալանավայրերում: Մահացել է բանտում:

ՄԱՐՉԵՆԿՈ Իրինա Սերգեևնա (ծ. 1934), ռուս դերասանուհի: ՀՀ ժող. արտիստ (2009): 1957–ից՝ Երևանի Կ. Ս. Ստանիսլավսկու անվ. ռուս. թատրոնի դերասանուհի (Գալչիխա, Ուլիտա, Գլումովա՝ Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», «Անտառ», «Իմաստունն էլ երբեմն միամիտ կլինի», Միլվա Գիբսոն՝ Բ. Մ. Ռացերի «Ռուսական արջ», Կոմսուհի–տատիկ՝ Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս», Անֆիսա՝ Ա. Պ. Չեխովի «Երեք քույր», Փառանձեմ՝ Մ. Չամանյանի «Վարդաձորյան իրարանցում», ևն):

ՀՀ «Մովսես Խորենացի» (1999), ՀԹԳՄ ոսկե (2013) մեդալներ, ՀԹԳՄ «Արտավազդ» մրց. (2010):

ՄԱՐՉԵՆԿՈ Վլադիմիր Ալեքսանդրովիչ (1922–2014), ուկրաինացի մաթեմատիկոս: Ուկրաինայի ԳԱԱ (1969), ՌԳԱ (1987) ակադ.: Աշխ–ները վերաբերում են ֆունկցիաների տեսությանը, ֆունկցիոնալ վերլուծությանը, դիֆերենցիալ հավասարումներին: Լենինյան մրց. (1962):

ՄԱՐՉՈՒԿ Գուրի Իվանովիչ (1925–2013), ռուս մաթեմատիկոս և ֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (1968), ԽՍՀՄ ԳԱ փոխնախագահ՝ 1975–80–ին, նախագահ՝ 1986–91–ին: Սոց. աշխ. հերոս (1975): ԽՍՀՄ ԳԱ, ՍԲ նախագահ (1975–80): 1980–86–ին՝ ԽՍՀՄ ՆԽ փոխնախագահ, ԽՍՀՄ գիտ–յան և տեխնիկայի կոմիտեի նախագահ: Աշխ–ները վերաբերում են հաշվող. և կիրառ. մաթ–ին:

Լենինյան (1961), ԽՍՀՄ (1979), ՌԴ (2000) Պետ. մրց–ներ:

ՄԱՐՋԱՆԻՇՎԻԼԻ (Մարջանով) Կոնստանտին (Կոտե) Ալեքսանդրի (1872–1933), վրացի ռեժ.: ՎԽՍՀ ժող. արտիստ (1931): Կ. Կ. *Մարջանիշվիլու* հայրը: 1897–ից հանդես է եկել ռուս. թատրոնում (նաև ՄԳԹ–ում): Մոսկվայում հիմնադրել է Ազատ (1913), Պետրոգրադում՝ Կոմիկ. օպերայի (1920) թատրոնները: 1922–26–ին՝ Թիֆլիսի Շ. Ռուսթավելու անվ. վրաց. թատրոնի ռեժ.: 1928–ին Քութայիսում հիմնադրել է 2–րդ վրաց. պետ. թատրոնը (1933–ից՝ Թբիլիսիի Մարջանիշվիլու անվ. վրաց. թատրոն): Ներկայացումներում զուգակցել է գեղանկարչության, քանդ–յան, երաժշտության, բալետի և այլ արվ–ների արտահայտչամիջոցները (Լևոն Շանթի «Հին աստվածներ», 1914, Լոպե դե Վեգայի «Ոչխարի աղբյուրը», 1919, Կիև, 1922, Թբիլիսի, ևն): Նկարահանել է ֆիլմեր:

ՄԱՐՋԱՆԻՇՎԻԼԻ Կոնստանտին Կոնստանտինի (1903–1981), վրացի մաթեմատիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1974): Սոց. աշխ. հերոս (1973): Կ. Ա. *Մարջանիշվիլու* որդին: Աշխ–ները վերաբերում են թվերի աղիտիվ տեսությանը և կիրառ. մաթ–ին:

ՄԱՐՋԱՆՅԱՆ Գեղեոն Միասկի (1907–1977), միջատաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1970): Հարություն *Մարջանյանի* եղբայրը: Աշխ–ները վերաբերում են Հայաստանում տարածված մշակաբույսերի վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի մեթոդների մշակմանը:

ՄԱՐՋԱՆՅԱՆ Հայկազ Հովհաննեսի (1900–1967), կուս–պետ. աշխատող: Գեղտ. գիտ. թեկնածու: 1938–45–ին՝ ՀԽՍՀ հողժողկոմ, 1945–46–ին՝ ԺԿԽ նախագահի տեղակալ, 1946–47–ին՝ ՀԿԿ ԿԿ գղտ. բաժնի վարիչ, 1948–50–ին՝ սննդհամի (1949–ից՝ սննդի) արդ–յան նախարար, 1956–ից՝ ՀԳԻ ռեկտոր:

ՄԱՐՋԱՆՅԱՆ Հարություն Միասկի (1912–1992), ճարտարագետ–հիդրոտեխնիկ: ՀԽՍՀ վաստ. ճարտարագետ: Գեղեոն *Մարջանյանի* եղբայրը: Արզնի (1949–52), Աթարբեկյան (1952–59) ջրէկների, Արփա–Սևան հիդրոտեխ. կառույցների (1962–87) նախագծերի գլխ. ճարտարագետ:

ՄԱՐՄ, հայկ. անվանումը՝ *Հրատ* (աստղագիտ. նշանը՝ ♂), Արեգակն. համակարգի՝ Արեգակից հեռ–յամբ 4–րդ մոլորակը: Մ–ի մակերևույթի տեղամասերը պատված են խառնարաններով, կան նաև, այսպես կոչված, մարսյան «ջրանցքներ», որոնք իրականում լեռների արանքում ընկած կիրճեր կամ բարձր լեռների եզրագծեր են: Հվ. և հս. բևեռներում կան սառցե գլխարկներ՝ սառած ածխաթթու գազից (CO_2, որը սառչում է –100°C–ում): Մ. ունի 2 բնական արբանյակներ՝ *Ֆոբոս* և *Դեյմոս*: Արեգակի շուրջը պտտվում է էլիպս. ուղեծրով: Միջին հեռ. Արեգակից՝ 1, 5237 *ա. մ.* (228 մլն *կմ*): Արեգակի շուրջ պտտման պարբերությունը (տարվա տևողություն)՝ 687 երկր. օր (1, 88 տարի), առանցքի շուրջ (օրվա տևողությունը)՝ 24,5: Միջին տրամագիծը՝ 6780 *կմ* (մոտ 2 անգամ փոքր է *Երկրի* տրամագծից): Զանգվածը՝ 6,4 ·10^{23} *կգ* (մոտ 10 անգամ փոքր Երկրի զանգվածից): Մթն–ի կազմը՝ CO_2 (≈ 95 %), N_2 (2,5 %), Ar (1,5–2 %), CO (0,06 %), H_2O (մինչև 1,1 %): Ջերմաստիճանը՝ –128°–ից մինչև +27°C:

Մ. հայտնի է հնուց, այն ուսումնասիրել են S. *Բրահեն*, Յ. *Կեպլերը*, Ք. *Հյուգենսը*, Ջ. *Կասինին*, Ջ. *Սկիապարելլին* և ուր.: XX դ–ի 2–րդ կեսին Մ. հետազոտել են *«Մարիներ»*, *«Մարս»*, *«Վիկինգ»* տիեզ. սարքերով:

«ՄԱՐՍ», խորհրդ. ինքնաշխատ միջմոլորակ. կայանների և դրանց մշակման և մեկնարկման ծրագրերի անվանումը: Նախատեսված էին Մարսի և տիեզ. տարածության ուսումնասիրության համար: Մեկնարկ. առլզն զանգվածը՝ մոտ 4,65 *տ*: 1962–77–ին արձակվել է 7 «Մ.»: «Մարս–2»–ի պատիճն առաջին անգամ հասել է Մարս, «Մարս–3»–ի իջեցվող սարքը վայրէջք է կատարել Մարսի վրա (1971): 1973–ին, առաջին անգամ, միջմոլորակ. ծրագծում միաժամանակ թռիչք են կատարել 4 «Մ.»–եր: «Մարս–5»–ը Մարս մոլորակի խորհրդ. 3–րդ արհեստ. արբանյակն էր, «Մարս–6»–ը հասել է Մարսի մակերևույթին:

ՄԱՐՍԵԼ (Marcel) Գաբրիել Օնորե (1889–1973), ֆրանսիացի փիլ., դրամատուրգ և գրաքննադատ, կրոն. էկզիստենցիալիզմի ներկայացուցիչ: Մ–ի փիլ–յան ելակետը կեցության՝ առանձին մարդու գոյության

խնդիրն է: Նա գոյության իսկական աշխարհը հակադրում է տիրապետող օբյեկտների աշխարհին («Կեցություն և տիրապետում», 1935): Մ–ի դրամաների («Պառակտված աշխարհը», 1933, «Ծառավ», 1938, «Հոռմն այլևս Հոռմում չէ», 1951, ևն) հիմքում կրոնաբարոյական խնդիրներն են:

ՄԱՐՍԵԼ, Լյուք Անդրե (1919–1992), ֆրանսիացի մշակույթի գործիչ, թարգմանիչ: Գրիգոր Նարեկացու ծննդյան 1000–ամյակի առթիվ ֆրանս. է թարգմանել «Մատյան ողբերգություն» պոեմից 25 էջ և ընդարձակ ուսումնասիրությամբ տպագրել «Քայե դյու Սյուդ» պարբ–ում: Թարգմանել է նաև Դանիել *Վարուժանի* բանաստեղծություններից (1969): «Հայ բանաստեղծություն» անթոլոգիայում (1975, կազմ.՝ Ռուբեն Մելիք) զետեղված են նաև Մ–ի թարգմ–յուններից (հայկ. ժող. երգեր, Գրիգոր Նարեկացի, Դավիթ Սալաձորցի, Պ. Դուրյան, Դ. Վարուժան, Մ. Մեծարենց, Ե. Չարենց և ուր.):

ՄԱՐՍԵԼ (ֆրանս.՝ Marseille), ք. Ֆրանսիայի հվ–ում՝ Լիոնի ծոցի ափին՝ Ռոնայի գետաբերանի մոտ, Բուշ դյու Ռոն դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 852 հզ. (արվարձաններով՝ շուրջ 1,5 մլն, 2012): Ֆրանսիայի ու Միջերկրածովայքի ամենամեծ նվինգստ–ն է, Անդրեվրոպ. նավթամուղի սկզբնակետը: Ունի մետրոպոլիտեն, միջազգ. օդանավակայան: Գործում են բուհեր, թատրոններ և թանգարաններ:

XVI դ–ում, երբ Մ. դարձել է միջազգ. առևտրի խոշոր կենտրոն, այնտեղ լայն գործունեություն են ծավալել նաև հայ վաճառականները: 1672–ին *Ոսկան Երևանցին* Մ–ում հիմնել է տպարան, որտեղ տպագրվել են հայ. գրքեր (տես *Մարսելի հայկական տպագրություն*): Մ–ի հայ համայնքը ստվարացել է ԱՀՊ–ից հետո, երբ Մեծ եղեռնից փրկված արևմտահայ գաղթականների մի մասը բնակություն է հաստատել քաղաքում և նրա շրջակայքում: Ներկայում Մ–ում բնակվում է շուրջ 80 հզ. հայ: Քաղաքում և նրա արվարձաններում գործում են Սբ Սահակ–Սբ Մեսրոպ Սրբոց թարգմանչաց, Սբ Կարապետ, Սբ Գևորգ, Սբ Թադեոս, Սբ Բարդուղիմեոս, Սբ Աստվածածին, Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները (որոնց կից՝ մեկօրյա դպրոցներ), Հայ նախկին ռազմիկների միության (1931–ից), Համազգ. մշակութ. միության (1934–ից), Ֆրանսահայ երիտասարդ. միության (ԺԱՖ), Ֆրանսահայ մշակութ. միության, «Ազնավուրը Հայաստանին» կազմ–յան, «Հայաստան» համահայկ. հիմնադրամի Մ–ի մասնաճյուղերը, Հայ ուսանող. կենտրոնը, Համազգ. լիցեյը, Անարատ հղության քույրերի վարժարանը ևն:

ՄԱՐՍԵԼԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Էքս Մարսել համալսարան, Ֆրանսիայի հնագույն համալսարաններից: Հիմնադրվել է 1409–ին Էքս ան Պրովանսում՝ որպես Գլխ. դպրոց: Մի շարք վերակազմավորումներից հետո 1846–ին համալսարան է ստեղծվել Էքս ան Պրովանսում, 1854–ին՝ Մարսելում, որոնք 1896–ին միավորվել են որպես Էքս Մարսել համալսարան: 1968–ին դարձյալ առանձնացել են՝ Էքս Մարսել համալսարան I (Պրովանսի համալսարան), Էքս Մարսել համալսարան II (1994–ից՝ Միջերկրածովյան համալսարան): 1973–ին հիմնադրվել է Էքս Մարսել համալսարան III–ը (Պ. Սեզանի անվ. համալսարան): 2009–ին 3 համալսարաններն իրենց մասնաճյուղերով (Ֆրանսիայի հվ–ի 11 քաղաքում) դարձյալ միավորվել են. կոչվում է Էքս Մարսել համալսարան: 2015–ին ուներ ավելի քան 70 հզ. ուսանող:

ՄԱՐՍԵԼԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, 1673–ին *Ոսկան Երևանցին* հայկ. տպարանը Լիվոռնոյից տեղափոխել է *Մարսել*, որտեղ նրա հետ աշխատել են Սողոմոն *Լմնայանը*, *Մարթեռոս Վանանդեցին*, Թադեոս Համազասյանը և ուր., տպագրել Գրիգոր Նարեկացու «Գիրք աղօթից» (1–ին հրտ., մնացել է անավարտ), Ժամագիրք, «Գիրք Սաղմոսաց Դավթին»: Գործել է մինչև 1686–ը, տպագրել 16 անուն գիրք: Մարսելում 1862–64–ին գործել է ճանկիկ *Արամյանի* (3 անուն գիրք), 1885–94–ին՝ Մկրտիչ *Փորթուգալյանի* (շուրջ 10 անուն գիրք, նաև *«ԱրմՆիա»* թերթը) տպարանները: Մինչև 1967–ը Մարսելում գործել են 10 հայկ. տպարաններ, որտեղ, բացի հայ. գրքերից, տպագրվել են նաև շուրջ 30 հայ. պարբ–ներ:

ՄԱՐՍԵԼԻՈՒԹՅՈՒՆ, յուրացվելիություն, սննդանյութերի օգտագործման աստիճանը՝ տարբեր միացություններից կենսասինթեզի ընթացքում էներգ. ծախսը լրացնելու համար: Որոշվում է սպիտակուցների, ճարպերի օրգանիզմ ներմուծված և օրգանիզմից հեռացված քանակության տարբերությամբ: Կենդ. սպիտակուցների Մ. 92–96 % է, բուսականինը՝ 46–70 %, ճարպերինը՝ 95 %, ածխաջրերինը՝ 98 %:

ՄԱՐՍԵԼՅԱՆ ՏԵՆԳ, սուր վարակիչ հիվանդություն, ռիկետսիոզ: Փոխանցողները շան տզերն են: Բնորոշվում է տենդով, ցանավորումով:

ՄԱՐՍՈ (Marceau, Մանժել) Մարսել (1923–2007), ֆրանսիացի դերասան–միմոս: «Միմոսների համագործակցություն» թատերախմբի հիմնադիր (1947, Փարիզ) և ղեկ. (մինչև 1960–ը): 1978–ին հիմնադրել է մնջախաղի դպրոց (Փարիզ): Ստեղծել է միամիտ, կյանքն ու մարդկանց սիրող Բիպի քնար. կերպարը: Մ–ի արվ–ը որոշակիորեն ազդել է XX դ–ի 2–րդ կեսի մնջախաղի ժանրի զարգացման վրա:

ՄԱՐՄՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, մարդու և կենդանիների մարսողության օրգանների ամբողջությունը: Ողնաշարավոր կենդանիների Մ. հ. կազմված է բերանի խոռոչից, ըմպանից, կերակրափողից, ստամոքսից, աղիներից, նաև մարսող. գեղձերից (լյարդ, ենթաստամոքս. գեղձ): Իրականացնում է սննդի մեխ. և քիմ. մշակումը, սննդանյութերի ներծծումը, կղանքի ձևավորումը և հեռացումը, օրգանիզմն ապահովում է անհրաժեշտ էներգիայով ու կառուցվածք. նյութերով:

ՄԱՐՄՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄ, **դիսպեպսիա** (< *դիս*... և հուն.՝ pepsis – մարսողություն), մարսելախանգարում: Նկատվում է ստամոքսաղիքային և այլ հիվանդությունների ժամանակ, երեխաներին ոչ ճիշտ կերակրելիս ևն: Ախտանշանները՝ այրոց, սրտագդալի տակ ծանրության զգացում, գխտոց, որովայնի փքանք, կծկացավեր, լուծ, փսխումներ, ընդհ. թունավորում:

«ՄԱՐՏ», ազգ., քաղ. ամսաթերթ (1897–1901, Լոնդոն): Խմբ.՝ Արփիար Արփիարյան:

«ՄԱՐՏ», գր., քաղ., հաս. պարբերաթերթ (1911–16, Մոսկվա): Խմբ–հրտ.՝ Արշակ Թումանյան:

ՄԱՐՏԱԿԱՄՈՒՐ, **ռազմակառք**, հատկապես ռազմ. նպատակներով գործածվող երկանիվ կամ քառանիվ կառք: Լծել են 1 կամ ավելի ձի (երբեմն՝ նաև ջորի): Մ–ում տեղավորվել են հիմնականում ռազմիկն ու կառավարը, թափքում ամրացվել–պահվել են կապարճը, նիզակը և անհրաժեշտ այլ զենքեր: Օգտագործվել են նաև հաղթանակի կամ հանդիսավոր այլ շքահանդեսներում ու մարզ. մրցումներում: Տարածվել են III հզ–ամյակից (Հին Արևելք, Հռոմ, Հունաստան): Մ. թ. ա. I հզ–ամյակի սկզբներից ռազմավարության մեջ առաջնակարգ է դարձել հեծելազորը (այրուձի):

ՄԱՐՏԱԿԵՐՏ, ք. (1991–ից) ԼՂՀ–ում, համանուն շրջանի վարչ. կենտրոնը, Ստեփանակերտից 75 *կմ* հս՝ Թարթառ գետի միջին հոսանքի աջ կողմում՝ 450 *մ* բարձր–յան վրա: Բն.՝ 4,5 հզ. (2013): Կա ոչ ալկոհոլ. խմիչքների շշալցման գործարան: Գործում է Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին: 1992–ի հունիս–1993–ի հունիսին գրավել են ադրբ. զորքերը, որից այն զգալի տուժել է: Ազատագրվել է 1993–ի հունիսի 27–ին:

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆ, վտմ ԼՂՀ–ում: Կազմավորվել է 1991–ին՝ ԼՂԻՄ–ի համանուն շրջանի (1931–39–ին՝ Ջրաբերդի շրջան) հիմքի վրա: Սահմանակից է Շահումյանի (հս–ում և արմ–ում), Ասկերանի (հվ–ում), Ադրբեջանի Բարդայի (արլ–ում) շրջաններին: Տարածքը՝ 1795,1 *կմ²*, բն.՝ 20 հզ. (2010): Վարչ. կենտրոնը՝ *Մարտակերտ*: Ունի 1 քաղաք. և 43 գյուղ. համայնքներ: Արդ. գլխ. ձեռն–ներն են Դրմբոնի լ–հանք. «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ–ն և Վանքի փայտամշակման կոմբինատը: Շրջանում են Սարսանգի և Մադաղիսի ջրէկները: Կան քարածխի, ոսկու, կապարի, պղնձի, ծծմբային կոչեդանի, երկաթի, գրանիտի, տուֆի, ավազի և այլ հանքավայրեր:

Ներկա տարածքն անցյալում եղել է Արցախ նհնգ–ի Ջրաբերդ գվո–ի կազմում: 1992–ի հուլիսի 4–ին Մ. շ–ում ծավալված մարտերից հետո ադրբ. բանակը գրավել է այն, հասել մինչև Սարսանգի ջրամբար, որը շուրջ 1 տարի մնացել է նրանց վերահսկողության տակ և հսկայական տնտ. կորուստներ կրել: 1993–ի հունիսի 28–ին ՊԲ–ն ազատագրել է շրջանի տարածքի հիմն. մասը:

«ՄԱՐՏԱԿՈՉ», հաս–քաղ., գր., մշակութ. օրաթերթ (1923–27, Թիֆլիս): Խմբ–ներ՝ Ալեքսանդր Սյասնիկյան, Հարություն Սուրխաթյան, Աշոտ Խումարյան, Սուրեն Երզնկյան, Սարգիս Խանոյան:

ՄԱՐՏԱՆԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ, ռազմապատկերում, պատերազմի և ռազմ. կյանք պատկերող ժանր կերպարվ–ում. ձևավորվել է XVI–XVII դդ–ում: Մ–յան պատկերներ են ստեղծել Լեոնարդո դա Վինչին, Միքելանջելոն, Պ. Ռուբենսը, Վ. Ի. Սուրիկովը, Ֆ. Ռուբոն, նաև Հ. Այվազովսկին, Հ. Կոջոյանը, Է. Իսաբեկյանը, Հ. Զարդարյանը, Գ. Խանջյանը և ուր.:

ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, տակտիկա (հուն.՝ taktika – զորքերը ղեկավարելու, շարելու արվեստ), *ռազմական արվեստի* բաղկացուցիչ, ներառում է ցամաք., օդ. և ծով. զորամիավորումները, մարտի նախապատրաստելու և այն վարելու տեսությունն ու պրակտիկան: Ընդգրկում է բոլոր տեսակի մարտ. գործողությունների (հարձակում, պաշտպ–յուն, հանդիպակաց մարտ ևն) ուսումնասիրումը, մշակումը, նախապատ–

բաստումը և վարումը: Մ. սկզբնավորվել է բանակի հետ: Նրա զարգացման ընթացքը (մ. թ. ա. VI–V դդ–XXI դ–ի սկիզբ) փաստորեն արտացոլում է ցամաք. զորքերի և ՌՃՆ–ի զարգացումը: Մերտորեն կապված է սպառազինության, զենքի ու մարտ. տեխնիկայի տեսակների հետ:

ՄԱՐՏԵՆ (Martin) Պիեռ Էմիլ (1824–1915), ֆրանսիացի մետաղագործ: Աշակել է (1864) ռեգեներատիվ բոցավառարանում ձուլածո պողպատի ստացման նոր եղանակ՝ օգտագործելով գերմանացի ճարտարագետ Ֆ. Սիմենսի՝ մինչ այդ մշակած այրման արգասիքների ջերմության վերականգնման սկզբունքը: Մ. կիրառել է այն օդի և գազի տաքացման համար: Դրա շնորհիվ հնարավոր է եղել ստանալ պողպատը հալելու համար բավարար ջերմաստիճան: Վառարանը և եղանակը կոչվել են Մ–ի անունով: Մարտեն. եղանակը լայնորեն կիրառվել է մետաղագործության մեջ XIX դ–ի վերջին քառորդում:

ՄԱՐՏԵՆՍ Ֆեոդոր Ֆեոդորովիչ (Ֆրիդրիխ Ֆրոմգոլդ, 1845–1909), ռուս. իրավաբան և դիվանագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1908): 1885–ից՝ Միջազգ. իրավունքի եվրոպ. ինստ–ի փոխնախագահ: Եղել է Ռուսաստանի պատվիրակը մի շարք միջազգ. համաժողովներում (այդ թվում՝ Հաագայի 1893–ի և 1907–ի): Աշխ–ները վերաբերում են պատերազմ. իրավիճակներում մարդու իրավունքների, միջազգ. հարաբերությունների տարբեր հարցերի:

«ՄԱՐՏԻԿ», շաբաթաթերթ (1993–ից, Ստեփանակերտ, սկզբում՝ «Մարտական թերթիկ»): ԼՂՀ ՊԲ պաշտոնաթերթ: Խմբ–ներ՝ Վալերի Աթաջանյան, Վահրամ Աթանեսյան, Հրանտ Ալեքսանյան, Մարսել Պետրոսյան, Սուրեն Սարուքյան (2004–ից):

ՄԱՐՏԻԿՅԱՆ Աշոտ Կարապետի (1912–1977), խմբ.: Մինաս *Մարտիկյանի* եղբայրը, Գոհար *Մարտիկյանի* հայրը: 1931–ին հայրենադարձել է: 1965–70–ին՝ *Հայկետհրատի* գլխ. խմբ. (ընդհատումներով), 1957–61–ին, միաժամանակ՝ *«Պոլիգրաֆիպ»* հանդեսի գլխ. խմբ.: Կազմել է հանրագիտ. օրացույցներ, «Կենցաղային օգտակար խորհուրդներ» (1957, 1959, 1961) ժող–ը: Համահեղինակ է «Կաղզվանը բոցերի մեջ» (1969) վավերագր. վեպի:

ՄԱՐՏԻԿՅԱՆ Գոհար Աշոտի (ծ. 1945), լրագրող, գրող: Աշոտ *Մարտիկյանի* դուստրը: Հեղինակ է «Իմ առաջին գիրքը» (1983) մանկ. պատմվածքների ժող–ի, «Ճղակոտոր իմ տոհմածառ» (2007), «Սա Հայաստան է և՝ վերջ: Լեոնիդ Ազգալդյան» (2012) վավերագր. վիպերգերի, «Ապրելու բանաձև» (հ. 1–7, 2008–13) մատենաշարի (Արցախյան ազատամարտում զոհված հայ քաջորդիների մասին):

ՄԱՐՏԻԿՅԱՆ Եղիշե Ավետիսի (1904–1988), արվեստաբան, նկարիչ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1961): Պրոֆ. (1970): Հեղինակ է «Փանոս Թերլեմեզյան» (1941, 1964), «Ռեմբրանդտ» (1959), «Հակոբ Կոջոյան» (1961), «Այծեմիկ Ուրարտու» (1962) և այլ մենագրությունների, «Սովետական Հայաստանի կերպարվեստը» (համահեղ., ռուս., 1956), «Հայկական կերպարվեստի պատմություն» (հ. 1–4, 1971–88) աշխ–ների, նաև գեղանկարչ. գործերի («Հին Երևան», 1936, «Արարատ», 1947, «Ինքնանկար», 1968, «Նատյուրմորտ գորգով», 1985, ևն):

ՄԱՐՏԻԿՅԱՆ Էմմա Սերգեյի (1908–1991), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1964), պրոֆ. (1965): Աշխ–ները վերաբերում են կրծքամզի թարախ. բորբոքումների (հրազեն. ծագման) վիրահատ. բուժման առանձնահատկություններին: Ուսումնասիրել է էխինոկոկոզի տարածվածությունը Հայաստանում, մշակել բուժման, կանխարգելման արդյունավետ միջոցներ: ՀԽՍՀ ԱՆ գլխ. մանկ. վիրաբույժ (1965–75):

ՄԱՐՏԻԿՅԱՆ Հարություն Զաքարի (Արթուր, 1899–1981), հաս–քաղ. գործիչ: ՀՕԿ–ի Մարսելի մասնաճյուղի հիմնադիրներից և քարտուղարը: ԵՀՊ–ի ժամանակ՝ Ֆրանսիայի հվ–ում հայ ազատ հրաձիգների ու պարտիզանների մարտ. խմբերի ղեկ.: Գրենոբոլի հակաֆաշիստ. ցույցին (1943–ի նոյեմբ.) մասնակցելու համար ձերբակալվել է և կալանավորվել *Բուխենվալդի* համակենտրոնացման ճամբարում: 1948–ին հայրենադարձել է:

ՄԱՐՏԻԿՅԱՆ Մինաս Կարապետի (1907–1978), խմբ., թարգմանիչ: Աշոտ *Մարտիկյանի* եղբայրը: Փիլ. գիտ. թեկնածու (1948): 1930–31–ին՝ Աթենքի *«Ժողովուրդի ձայն»* հունահայ 1–ին կոմ. թերթի հիմնադիր–խմբ.: 1931–ին հայրենադարձել է: Հեղինակ է «Սովետական Միության հերոս գեներալ–մայոր Ասքանազ Կարապետյան» (1946) գրքի, «Առաջավոր նորի անհաղթահարելիությունը» (1959) և այլ աշխ–ների:

ԽՍՀՄ «Կարմիր աստղ» շքանշան (1945):

ՄԱՐՏԻԿՅԱՆ Սերգեյ (Սերգո) Նիկոլայի (1874–1957), կուս–պետ. գործիչ: Եղել է ՀՍԽՀ ԺՏԽ, Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ, 1933–36–ին ընտրվել է ՀՍԽՀ, ապա՝ ԱԽՖՍՀ կենտգործկոմների նախագահ: Անհիմն բռնադատվել է, 1937–40–ին եղել է աքսորավայրում:

ՄԱՐՏԻՆ (Martin) Արչեր Ջոն Փորտեր (1910–2002), անգլիացի կենսաքիմիկոս և ֆիզքիմիկոս: Լոնդոնի թագավոր. ընկյան անդամ (1950): Աշակել է բաշխական քրոմատագրության մեթոդներ՝ թղթի վրա (1941, Ռ. *Սինգի* հետ), և աշտարակային գազահեղուկային (1952, Ա. Ջեյմսի: Նոբելյան մրց. (1952, Ռ. Սինգի հետ):

ՄԱՐՏԻՆԻ, **Հայր Մարտինի** (Martini), Ջովաննի Բատիստա (1706–1784), երաժշտության իտալացի տեսաբան, կոմպոզիտոր, հոգևորական: Հեղինակ է Եվրոպայում երաժշտության պատմության, պոլիֆոնիայի առաջին աշխ–ների, նաև օպերաների, մեսսաների, օրատորիայի, երգեհոնի, կլավեսինի պիեսների և այլ երկերի: Աշակերտներից են Վ. Ա. Մոցարտը, Յ. Կ. Բախը և ուր.:

ՄԱՐՏԻՆԻԿԱ (Martinique), 1. կղզի Վեստ Ինդիայում: Տարածքը՝ 1,1 հզ. *կմ²*: Բարձր.՝ մինչև 1397 *մ* (Մինտան Պելե հրաբուխ): Հայտնագործել է Ք. *Կոլումբոսը* 1502–ին: 2. Ֆրանսիայի անդրծով. դեպարտամենտ՝ համանուն կղզում (Վեստ Ինդիայում): Բն.՝ 404 հզ. (2009): Վարչ. կենտրոնը և գլխ. նվինգստ–ը՝ *Ֆոր դե Ֆրանս*: Կառավարումն իրականացնում է ֆրանս. կառ–յան նշանակած նահանգապետը:

ՄԱՐՏԻՆՈՍ ՕՊԱՎԻԱՑԻ (Martinus Oppaviensis), **Լեհացի** (XIII դ–ի սկիզբ–1279), ժամանակագիր, կաթոլիկ եկեղեց. գործիչ: Հայտնի է եկեղեց. իրավ. կանոններով ու քարոզներով: Ժամանակագրությունն ընդգրկում է նախաքրիստ. Հռոմի պատմությունից մինչև XIII դ–ի 2–րդ կեսը. օգտագործվել է որպես ընդհանուր պատմության դասագիրք: 1348–ին *Ներսես Պալհանենցը* թարգմանել է հայ.:

ՄԱՐՏԻՆՈՎ Ալեքսանդր Եվստաֆևիչ (1816–1860), ռուս. դերասան: Ռուս. բեմ. ռեալիզմի դպրոցի հիմնադիրներից: 1836–ից՝ Ս. Պետերբուրգի Ալեքսանդրյան թատրոնի դերասան: Վոդևիլներում երգիծ. գրոտեսկ. կոմիզմից երբեմն հասել է ողբերգության (Իլեետակով՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», Տիխոն՝ Ա. Ն. Օստրովսկու «Ամպրոպ», ևն):

ՄԱՐՏԻՆՈՎ Իվան Վասիլևիչ (ծ. 1919), ռուս. քիմիկոս–օրգանիկ: ՌԳԱ թղթ. անդամ (1981): Սոց. աշխ. հերոս (1974): ԽՍՀՄ ԳԱ ֆիզիոլոգիապես ակտիվ նյութերի ինստ–ի տնօրեն (1978–89): Աշխ–ները վերաբերում են ֆտոր– և ֆոսֆորօրգ. միացությունների սինթեզին և ուսումնասիրությանը: Աշակել է (1963) α–նիտրոկարբոնաթթուների, α–ամինաթթուների և նրանց ածանցյալների, հալոգեննիտրոզոալկանների և հալոգեննիտրոզոալկանների սինթեզի եղանակ: Լենինյան մրց. (1972):

ՄԱՐՏԻՆՈՎ Լեոնիդ Նիկոլաևիչ (1905–1980), ռուս գրող: Հեղինակ է «Ծովածոց» (1945), «Չափազանցություններ» (1972), «Սիրիկների հանգույց» (1979), «Առաջնեկություն» (1965, հայ.՝ 1976) փիլ. քնարերգ. ժող–ների, «Տորոյան տարեգիր» (1937) պոեմ–վիպակի, «Օդային ֆրեգատներ» (1974) ինքնակենսագր. գրքի, «Անվերջության նշան» (1980) հուշագրության:

ՌԽՖՍՀ Մ. Գորկու անվ. (1966), ԽՍՀՄ (1974) Պետ. մրց–ներ:

ՄԱՐՏԻՆՈՎ Վալենտին Վլադիմիրովիչ (ծ. 1940), հաշվող. տեխնիկայի բնագավառի ռուս. գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1991), պրոֆ. (2005): Հովսեփ *Ստր–Ատվածատրյանի* թոռը, Վ. Պ. *Մարտինովի* որդին: Աշխ–ները վերաբերում են հաշվող. համակարգերի հուսալիության հարցերին: ՀՏԱ անդամ (1990, փոխնախագահ՝ 2010–ից):

ՄԱՐՏԻՆՈՎ Վլադիմիր Պավլովիչ (1909–1995), հիդրոէներգետիկայի բնագավառի ռուս. գիտնական: Տեխ. գիտ. թեկնածու (1956): Հայաստանում էներգետիկայի հիմնադիրներից: ՀԽՍՀ վաստ. ճարտարագետ (1968): ԽՍՀՄ պատվ. էներգետիկ (1979): Վ. Վ. *Մարտինովի* հայրը: Աշակել է ջրէկների համակարգի ջրաուժային նոր ռեժիմ, ստեղծել ջրէկի աշխ–ի արդյունավետության վերլուծության մեթոդ: Բ. Ե. Վեդենեևի անվ. մրց. (1950), ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան (1983):

ՄԱՐՏԻՆՈՎ Վլադլեն Արկադևիչ (1929–2008), ռուս. տնտեսագետ: ՌԳԱ ակադ. (1994, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1987–ից): Աշխ–ները վերաբերում են քաղաքատնտեսության և ազրար. հարաբերությունների հիմնախնդիրներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1977):

ՄԱՐՏԻՆՍՈՆ (Martinson) Հարրի Էդմունդ (1904–1978), շվեդ գրող: Մ. *Մարտինսոնի* ամուսինը: Շվեդիայի լեզվի և գրկ–յան ակադ–ի անդամ (1949): Հեղինակ է «Քոչվորը» (1931), «Պասսատ» (1945), «Ցիկադա» (1953), «Բանաստեղծություններ լույսի ու խավարի մասին» (1971) փիլ. բանաստեղծությունների ժող–ների, «Եղինջը ծաղկում է» (1935), «Կյանքի ուղին» (1936) ինքնակենսագր. հոգեբ. վեպերի, «Անհիմրա» (1956) սիմվոլիստ. ֆանտաստիկ պոեմի և այլ գործերի: Ինքնասպան է եղել: Նոբելյան մրց. (1974):

ՄԱՐՏԻՆՈՒՍ ՏՈՒՐՈՒԱՑԻ (Martinus Turonensis, մոտ 316/335–397), համա-

քրիստ. սուրբ, Տուրի եպս. (371-ից), Ֆրանսիայի հովանավորը: *Հիլարիոս Պիկտավիացու* աշակերտը, անապատական, քարոզիչ: Մ. Տ–ու խցերի մոտակայքերում ստեղծվել են Գալիայի 1–ին մենաստանները: Լիգուժեն ու Մարմուտիեն: Մ. Տ–ու վարքը գրել է նրա աշակերտ Սուլպիցիուս Սևերուսը:

ՄԱՐՏԻՐՈՍ ԴԻ ԱՌԱՔԵԼ, XVIII դ–ի 1–ին կեսի հայ վաճառական, ժամանակագիր, ճանապարհորդ: Եղել է Պարսկաստանում, Հնդկաստանում, Իտալիայում: Կազմել է Սեֆյան Պարսկաստանի (մինչև 1729–ը) և «Վասն թագաւորաց Հընդկաց» համառոտ ժամանակագրությունները:

ՄԱՐՏԻՐՈՍ ԵԳԻՊՏԱՑԻ, Անեցի (ծ. թ. անհտ–1451), հոգևոր և մշակույթի գործիչ, Երուսաղեմի հայոց պատրիարք՝ 1419–30–ին:1439–ին նրա ջանքերով կառուցվել է Երուսաղեմի Երկրորդ Գողգոթա եկեղեցին, նույն թ–ին պատվիրել և ստացել է Հայսմավուրք (գրիչ՝ Սարգիս Արծկեցի), 1441–ին ձեռք բերել, նորոգել և արծաթե կազմով պատել է «*Կեռան թագուհու Ավետարանը*» (1272), նաև 1294–ին Կիլիկիայում գրված մի Մաշտոց (Երուսաղեմի մտնդ., ձեռ. № 2563, 2673):

ՄԱՐՏԻՐՈՍ ԵՐԶՆԿԱՑԻ, ճանապարհորդ: 1489–96–ին ճանապարհորդել է (նավով՝ Կ. Պոլիս, Վենետիկ, Հռոմ, Հետիոտն՝ Շվեյցարիա, Գերմանիա, Ֆրանսիա, Իսպանիա), նավարկել Պիրենեյան թ–կղզու շուրջը, ափ իջել Հվ. Ֆրանսիայում, ապա Հս. Իտալիայով հասել Հռոմ, Անկոնա և վերադարձել Երզնկա: Անցնելով ավելի քան 13 հզ. *կմ*՝ նկարագրել է հարյուրավոր բնակավայրեր, վանքեր, տվյալներ հավաքել բնակչության թվի, տնտ. կյանքի վերաբերյալ:

ՄԱՐՏԻՐՈՍ ԽԱՐԱՄԱՐՑԻ, XVI դ–ի տաղերգու: Գրել է սիրային, կենցաղ–ծիս. տաղեր, առաջինն է երգել խնջույքը, ուրախությունը՝ դառնալով այդ մոտիվի սկզբնավորողը հայ գրկ–յան մեջ: Մ. Խ–ու տաղերի ինագույն օրինակները պահպանվել են Մտնդ–ի № 33 ձեռագրում, տպագրվել Կ. Կոստանյանի «Նոր ժողովածոյ...»–ում (պր. 2, 1892):

ՄԱՐՏԻՐՈՍ ԽԱՐԲԵՐԴՑԻ, XVI դ–ի տաղասաց: Մեզ հասած միակ տաղը՝ «Երգ ի Խարբերթցի Մարտիրոս Երիցուէ ասացեալ ի վերայ չախուի...», որը հայ երգիծ. քնարերգության առաջին արտահայտություններից է, պահպանվել է Մտնդ–ի № 33, 2676, 8968 ձեռագրերում (ԺՋ դ.), տպագրվել Ղևոնդ Ալիշանի «Հայոց երգք ռամկականք» (1852), Կ. Կոստանյանի «Նոր ժողովածոյ...» (պր. 2, 1892) ժող–ներում:

ՄԱՐՏԻՐՈՍ ԽԻԶԱՆՑԻ, XVI դ–ի վերջ–XVII դ–ի սկզբի մանրանկարիչ: Վասպուրականի մանրանկարչության դպրոցի ներկայացուցիչ: Ձեռագրեր է պատկերազարդել որդու՝ Գրիգորիսի հետ (Ավետարան, 1598, ձեռ. № 5576, Հովհան Ոսկեբերան, Մեկնություն, 1600, ձեռ. № 1378, Ավետարան, 1604, ձեռ. № 6093, Հայսմավուրք, 1604, ձեռ. № 10676, Ավետարան, XVII դ., ձեռ. № 8934, բոլորը՝ Մտնդ.):

ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՑԻ, Մարտիրոս Կաֆացի (1620–1683), եկեղեց–քաղ. գործիչ, մատենագիր, տաղասաց: Կ. Պոլսի (1659–60) և Երուսաղեմի (1677–80, 1681–83) հայոց պատրիարք, Ղրիմի հայոց թեմակալ (1661–64): Հեղինակ է «Կարգ եւ թիւ թագաւորաց ազգիս Հայոց» (1672), «Պատմութիւն Ղրիմայ յերկրին» (1672), «Ողբ Երեմիա մարգարէ՛ին...» (1670–ական թթ.) երկերի: 1672–ին չափածոյի է վերածել *Հայսմավուրքը*, գրել է չափածո պատմ. երկեր, գանձեր, ներբողներ, տաղեր ևն:

ՄԱՐՏԻՐՈՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ (հուն.՝ martyrologion, < martyros – նահատակ և logos – բառ, ուսմունք), 1. քրիստ. եկեղեց. գրկ–յան մեջ սրբերի և նահատակների մասին օրացուց. կարգով, ըստ պատարագ. հիշատակությունների, կազմված ժող.: 2. Հետապնդումների, հալածանքների, տառապանքների ենթարկված գոհերի ցուցակ:

ՄԱՐՏԻՐՈՍԻ ԼԵՌՆԱՆՑՔ, Վայքի լ–շղթայի կենտր. մասում՝ 2050 *մ* բարձրյան վրա՝ Վայոց ձորի մարզում: Արփայի վերին հոսանքի ավազանը կապում է Նախիջևանին: Մ. լ–ով է անցնում Վայք–Նախիջևան խճուղին:

ՄԱՐՏԻՐՈՍԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ, XIII դ–ի ժայռափոր (Նզար լ.) ճարտ. համալիր ՀՀ Վայոց ձորի մարզի Մարտիրոս գ–ից հվ–արլ.: Կառուցել է Մատթեոս վրդ–ը (ճարտ.՝ Գրիգորիկ): Բաղկացած է քառակուսի հատակագծով նախագավթից, երդիկավոր ժամատնից:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Ալեքսանդր Մարտինի (ծ. 1935), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1988): Աշխ–ները վերաբերում են արդ–յան կառավարման և մեծածախ առևտրի կատարելագործման, մեծածախ առևտրի և արդ–յան փոխհարաբերությունների ամրապնդման հարցերին:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Ամասի Պետրոսի (1897–1971), կինոռեժ., կինոդերասան, սցենարիստ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1956), ՀԽՍՀ ժող. արտիստ (1967): 1922–ից՝ Թիֆլիսի կինոստուդիայի, 1926–ից՝ Հայկինոյի դերասան, 1929–ից՝ ռեժ.: Նկարահանվել է «Նամուս» (1925), «Զարե» (1926), «Կիկոս» (1933) և այլ ֆիլմերում: Ստեղծել է գեղ. («Գիքոր», 1934, «Քաջ Նազար», 1940, «01–99», 1959, ևն) և վավերագր. («Հայաստանն այսօր», 1933, «Սասունցի Դավթի հազարամյակը», 1939, ևն) կինոնկարներ: ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Աշոտ Նավասարդի (ծ. 1946), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1990), պրոֆ. (1993): Աշխ–ները վերաբերում են առաձգականության տեսության որոշ ոչ ստացիոնար սահման. խնդիրների լուծումներին, անիզոտրոպ և իզոտրոպ առաձգ. միջավայրերի ոչ ստացիոնար շարժումների սահման. խնդիրներին:

ՌԲՊԳԱ ՀԲ ակադ. (2000):

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Առնոլդ Բոգդանի (1902–1976), դերասան, ռեժ.: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1962): 1938–ից՝ ԵՊՀԹ դերասան (Ֆերդինանդ՝ Ֆ. Շիլլերի «Սեր և խարդավանք», Արթուր՝ «Բոռ»՝ ըստ Է. Վոյնիչի, ևն), պիեսներ է բեմադրել Վանաձորի, Արտաշատի, Կապանի թատրոններում, նաև ԵՒԹ–ում (Վ. Շեքսպիրի «Օթելլո», Կ. Մ. Սիմոնովի «Ռուսական հարց» ևն):

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Արմեն Աքիլեսի (ծ. 1971), հրտ.:1996–ից՝ «Անտարես մեդիա հոլդինգ» հրտչ. համալիրի հիմնադիր–տնօրեն:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Արտաշես Ազատի (1930–1998), բանասեր, պատմաբան, մատենագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1970): Հասմիկ *Սնապիրոսյանի* հայրը: 1995–ին հիմնադրել և խմբագրել է «Աշտանակ» հայագիտ. պարբերագիրքը (լույս է տեսել 3 համար): Հեղինակ է «Մարտիրոս Ղրիմեցի» (1958), «Պատմութիւն եւ խրատք Խիկարայ իմաստնոյ» (գիրք 1, 2, 1969, 1972), «Մաշտոց» (1982) աշխ–ների:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Բալաբեկ Գրիգորի (1905–1972), խորհրդ. կուս–պետ. աշխատող: 1938–42–ին՝ ՀԽՍՀ լուսժողկոմ, 1953–59–ին՝ ՀԽՍՀ ՆԽ նախագահի տեղակալ: 1959–61–ին՝ Բարձրագույն և միջնակարգ մասնագիտ. կրթության պետ. կոմիտեի նախագահ, միաժամանակ, 1958–ից՝ ՀԽՍՀ ԱԳ նախարար:

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (2), ՀՄՊ 2–րդ աստիճանի, «Պատվո նշան» շքանշաններ:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Բորիս Պաստյորի (ծ. 1956), մանկավարժ: ՌՄԳԱ ակադ. (2008): ՌԴ գիտ. վաստ. գործիչ (2011): ՀՀ ԳԱԱ (2011) և Ուկր. ԳԱԱ արտ. անդամ: 1999–ից՝ ՌԿԱ փոխնախագահ: Աշխ–ները վերաբերում են դպրոցականների ճանաչող. ակտիվության խնդիրներին, դպրոցի նորարարացման տեսությանը և մեթոդներին: ՌԴ Կառ–յան մրց. (2008):

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Գագիկ Հմայակի (ծ. 1951), ճարտարագետ–շինարար: Տեխ. գիտ. դ–ր (2006): 1990–93–ին՝ ՀՀ շինյան, 1993–95–ին՝ ՀՀ պետ. նախարար, 1995–98–ին՝ էներգետիկայի, 1998–99–ին՝ արտադր. ենթակառուցվածքներն համակարգող նախարար, 1999–2004–ին՝ ՀՀ Կառ–յանն առընթեր Ջրտնտ–յան պետկոմի նախագահ: 2004–08–ին, 2016–ից՝ ՀՀ վարչապետի խորհրդական: Աշխ–ները վերաբերում են Հայաստանի ջրտնտ–յան զարգացման խնդիրներին:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Գայանե Մարտիրոսի (ծ. 1950), ռեժ.: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2008): 1973–ից՝ Հայֆիլմի ռեժ., ծավալ. անիմացիոն ֆիլմերի բաժնի հիմնադիրը: Նկարահանել է «Չակո» (1984), «Քամու թևերին» (1990), «Հին ջրաղացի բարի ոգիները» (1993), «Վիշապագորգ» (մաս 1, 2008), «Վիշապագորգի գաղտնիքը» (մաս 1–2, 2009–10, բոլորի սցենարիստը և ռեժ–ը) մուլտֆիլմերը:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Գյուլաբ Արամի (ծ. 1925), քաղաքագետ, հրապարակախոս: Փիլ. գիտ. թեկնածու (1953), պրոֆ. (1992): Հեղինակ է «Լեգենդար Չարդախլուի, Լեռնային Ղարաբաղի, Գետաշենի ողբերգությունների մասին իմ հեռագրերը Գորբաչովին» (1995), «Գորբաչովը և Լեռնային Ղարաբաղի ողբերգությունները» (2000), «Իմաստնությունը և բարին հայերի կյանքում» (2009, երեքն էլ՝ ռուս.) և այլ երկերի: Ռյազանի հայկ. «Արաքս» մշակութ. ընկ–յան ղեկ.:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Գուրգեն Թորգոմի (1934–2001), քիմիկոս–օրգանիկ: Քիմ. գիտ. դ–ր (1972), պրոֆ. (1976): Հետազոտել է հիմնային միջավայրում CH և NH թթությունների չհագեցած միացություններով և ալկիլ հալոգենիդներով ալկիլման ռեակցիաները: Բացահայտել է ցածր ջերմաստիճաններում պրոտոնազուրկ երկբևեռ լուծիչներում չհագեցած միացությունների հալոգենացման ռեակցիաների մեխանիզմը, որով կրճատվել են քլորոպրենի արտադր–յան թափոնները:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Դերենիկ Արամայիսի (ծ. 1943), դերասան, ռեժ.: ՀՀ վաստ. արտիստ (2006): 1958–68–ին՝ Էջմիածնի ժող. թատրոնի, 1969–ից՝ ԵՏԹ դերասան–տիկնիկավար, ռեժ.: Դերերից են՝ Տատասկ (Գ. Տեր–Գրիգորյանի «Մեռնող ֆլորան»), Տարտալիա (Կ. Գոցցիի «Երեք նարինջ»)

ևն, բեմադրել է Ռ. Մարուխյանի «Կախարդական ճրագի գաղտնիքը» (1992) և այլ պիեսներ: Հեղինակ է «Լևոն Հարութ» (1980), համահեղ.՝ «Տիկնիկների աշխարհը» (1986), «Հովի. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոն» (2005, ալբոմ–ժող.) գրքերի:

ՀԹԳՄ «Արտավազդ» մրց., ՀՀ ՄՆ ոսկե, «Մովսես Խորենացի» (2016) մեդալներ:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Իշխան Մամբրեի (ծ. 1938), էներգետիկ–տնտեսագետ, խմբ.: Տնտեսագիտ. թեկնածու (1968): ՀԳԱԱ թղթ. անդամ (1995): Աշխ–ները վերաբերում են բնական գազի և նավթի օգտագործման տնտեսագիտ., ինչպես նաև գղտ–յան մեջ ագրոքիմ.նոր տեխնոլոգիաների ներդրման խնդիրներին: 1980–92–ին՝ *«Ազատ մազագին»* (ֆրանս., հայ., Գրենոբլ) եռամսյայի գլխ. խմբ–ի տեղակալ:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Համբիկ Օննիկի (ծ. 1945), խմբ., մանկավարժ, գրող: 1966–86–ին՝ Դամասկոսի ՀԲԸՄ Կյուլապի Կյուլպենկյան վարժարանի տնօրեն, 2007–ից՝ ՀԲԸՄ *«Խօսնակ»* պաշտոնաթերթի գլխ. խմբ.: Հեղինակ է բանաստեղծությունների, արձակ գործերի ժող–ների:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Հայկ Արմանի (ծ. 1972), երգիչ (բաս): Տիգրան Ա. *Մարտիրոսյանի* եղբայրը: 1994–96–ին՝ Մոսկվայի Նոր օպերայի, 1996–ից՝ Մեծ թատրոնի մեներգիչ (Եվգենի Օնեգին՝ Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», Արշակ Բ՝ Տ. Չուխաճյանի «Արշակ Բ», ևն):

Իսպանիայի (Բարսելոն, 1995, 2–րդ և Հատուկ մրց–ներ), Ե. Օբրազցովայի (1–ին մրց.), Վ. Գերգիևի (Հատուկ մրց., Ս. Պետերբուրգ, 2000), Սոնյա թագուհու անվ. (Օսլո, 2000, 3–րդ մրց.) միջազգ. մրցույթների դափնեկիր:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Հայկ Հովհաննեսի (1903–1995), խորհրդ. բանակի գեն–մայոր (1943): 1938–41–ին Հեռավորարլ. ԶՕ–ում՝ դիվիզիայի հրամ–ի տեղակալ, հրամ.: ՀՄՊ–ի ժամանակ՝ հրաձգ. դիվիզիայի (որոշ ժամանակ՝ կորպուսի) հրամ.: Աչքի է ընկել Մերձբալթիկայի, Արլ. Պրուսիայի, Քյոնիգսբերգի մարտերում: 1946–51–ին՝ *Թամանյան դիվիզիայի* հրամ.: Զորացրվել է 1954–ին:

Լենինի, Կարմիր դրոշի (3), ՀՄՊ 1–ին, Կուտուզովի 2–րդ աստիճանների շքանշաններ:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Հասմիկ Արտաշեսի (ծ. 1968), իրավագետ: 1991–ից՝ ԱՄՆ–ում: Բոստոնի Նորթ Իսթերն համալսարանի իրավագիտ–յան դ–ր (2001): Արտաշես *Մարտիրոսյանի* և Ալլիտա *Դոլուխանյանի* դուստրը: Աշխ–ները վերաբերում են համատիրություններում մարդու իրավունքներին, կոռուպցիայի հիմնախնդիրներին:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Հարություն Արտաշեսի (1921–1977), պատմաբան, ինագետ: Պատմ. գիտ. դ–ր (1965), պրոֆ. (1966): Աշխ–ները վերաբերում են Հայկ. լ–աշխարհի և Այսրկովկասի ինագույն մշակույթին, Վանի թագավորության պատմությանը և Հին Արևելքի ժողդ–ների հետ Հայկ. լ–աշխարհի ու Կովկասի ինագույն ցեղերի փոխհարաբերություններին:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Մարգար Մարտիրոսի (ծ. 1955), նյարդավիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (2004): Աշխ–ները վերաբերում են զուգակցված գանգուղեղային վնասվածքների, ԿՆՀ–ում առաջացած արատների, տարբեր պատճառագիտ–յան ներգանգ. արյունազեղումների բուժման խնդիրներին:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Մարսել Մարտիրոսի (1925–2012), մեխանիկոս: Տեխ. գիտ. դ–ր (1988): Աշխ–ները վերաբերում են պոլիմեր. բաղադրյալ նյութերի (ապակեպլաստներ, օրգանոպլաստներ, ածխապլաստներ) մեխանիկային, վերամշակման տեխնոլոգիային և նյութագիտ–յանը:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Մարուսյա Սահակի (1924–2003), դերասանուհի: ՀՀ ժող. արտիստ (1967): Մաքսիմ *Մարտիրոսյանի* քույրը: 1953–70–ին՝ Լենինականի թատրոնի, 1971–80–ին՝ ԵԴԹ–ի դերասանուհի (Մարգարիտ՝ Շիրվանզադեի «Պատվի համար», Մեղեա՝ Եվրիպիդեսի «Մեղեա», Եղիսաբեթ թագուհի՝ Վ. Շեքսպիրի «Ռիչարդ III», Վալյա՝ Ա. Ն. Արբուզովի «Իրկուտսկյան պատմություն», ևն):

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Մաքսիմ Սահակի (ծ. 1931), բալետի արտիստ, բալետմայստեր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1960), ՌԴ ժող. արտիստ (1973): Մարուսյա *Մարտիրոսյանի* եղբայրը: 1997–ից՝ Երևանի պարարվ–ի թատրոնի հիմնադիր–գեղ. ղեկ.: 1959–71–ին՝ Երևանի պարարվ–ի ուսումնարանի գեղ. ղեկ., 1952–67–ին՝ ԵՕԲԹ–ի մենապարող (Ալբերտ՝ Ա. Ադանի «Ժիզել», Կարեն՝ Ա. Խաչատրյանի «Գայանե», ևն), 1967–89–ին (ընդմիջումով)՝ գլխ., 1989–92–ին՝ բալետմայստեր, 1971–87–ին՝ Մոսկվայի պարարվ–ի ուսումնարանի գեղ. ղեկ., 1977–78–ին՝ Սան Պաուլույի (Բրազիլիա), 1992–97–ին՝ Մոնրեալի (Կանադա) «Դիվերտիմենտո դե Մոնրեալ» բալետի խմբերի բալետմայստեր: Բեմադրել է Գ. Եղիազարյանի «Անուրջների լիճը» (1967), Ս. Ս. Պրոկոֆևի «Մոխրոտը» (1998), Ա. Վիվալդիի «Տարվա եղանակները» (2002), Ա. Խաչատրյանի «Հավերժությունը» (2004) և այլ բալետներ:

Բալետմայստերների համամիութ. մրցույթի 3–րդ մրց. (1967, Մոսկվա), ՀՀ «Մեսրոպ Մաշտոց» շքանշան (2001), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2–րդ աստիճանի մեդալ (2016):

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Յուրիկ Լավրենտիի (1951–2006), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (2005): Աշխ–ները վերաբերում են բարձր հոսանքով ինդուկցիոն արագացուցիչների նոր տիպի մագնիս. համակարգերի մշակման և կառուցման հարցերին:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Նշան (1894–1966), արևելագետ, խեթագետ: Աշխ–ները վերաբերում են հայ–ի ծագումնաբանությանը, հայկ. դից–յանը, աշխարհագրությանը, փոքրասիական հնագույն ժողդ–ների ու հայերի առնչություններին և այլ հարցերի: Հեղինակ է նաև *«Գիլգամեշ»* դյուցազնավեպին նվիրված աշխ–յան (1963): Գերմ. և չեխ. է թարգմանել հայ գրկ–յան նմուշներ:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Պարգև Խաչատուրի (ավազանի անունը՝ Գուրգեն, ծ. 1954), աստվածաբան: Աստվածաբանության դ–ր (1987): ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ (1989–ից), արք. (1999): Արցախյան շարժման գործիչ, ԱրՊՀ–ի պատվ. դ–ր: 1989–ի հոկտ. 1–ին, 70–ամյա ընդմիջումից հետո, անդրանիկ պատարագն է մատուցել *Գանձասարի վանքի* Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցում: Կազմակերպել է Շուշիի Ղազանչեցոց Սբ Ամենափրկիչ եկեղեցու (1996–ից՝ առաջնորդանիստ) վերականգնման աշխ–ները: Հեղինակ է «Ես եմ ճանապարհը» (1995), «Երկնային օգնություն քրիստոնյա զինվորին» (1995) և աստվածաբան. այլ երկերի: ՌՈՒԵ «Սբ Դանիիլ» (1996), ԼՂՀ «Սբ Գրիգոր Լուսավորիչ» (2001) շքանշաններ, ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2–րդ աստիճանի (2011), ՌՈՒԵ Անդրեյ Նախավկայի, ՀՀ վարչապետի, ՊՆ «Երախտագիտություն», «Անդրանիկ Օզանյան», «Գարեգին Նժդեհ», ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ» մեդալներ:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Ջուլիետ Ժորայի (ծ. 1954), խմբ., հրապարակախոս: 1997–ից՝ *«Ավանգարդ»* թերթի գլխ. խմբ.:

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2008), Ֆրիտյոֆ Նանսենն հիմնադրամի հուշամեդալ (2009):

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Ռադիկ Մարտիրոսի (ծ. 1936), ռադիոֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1980), պրոֆ. (1983): ՀՀ ԳԱԱ ակադ. (1990, թղթ. անդամ՝ 1986–ից), ՌԴԱ արտ. անդամ (2016): 1980–2006–ին՝ ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստ–ի տնօրեն, 1993–2006–ին, միաժամանակ՝ ԵՊՀ ռեկտոր: 2006–ից՝ ՀՀ ԳԱԱ նախագահ: Աշխ–ները վերաբերում են քվանտ. և գերբարձր հաճախությունների ռադիոֆիզիկային: Հայտնաբերել և հետազոտել է քվանտ. ուժեղացուցիչներում որպես ակտիվ միջավայր ծառայող նոր նյութեր: Մ–ի մշակած 21 *սմ* ալիքի երկյան քվանտ. ուժեղացուցիչը ԽՍՀՄ–ում առաջինն է կիրառվել աստղաֆիզիկայում: Բարձրջերմաստիճան գերհաղորդչի կամրջակ. թաղանթ. կառուցվածքներում հայտնաբերել է ինտենսիվ քվազիմններանգ սեփ. ճառագայթում՝ ԳԲՀ տիրույթում: Նրա ղեկավարությամբ մշակված բարձրզգայունության ռադիոընդունիչ համակարգերը կիրառվել են երկրի բնական պաշարների հետազոտման «Պրիրոդա» և «Օկեան» միջազգ. գիտ. ծրագրերում, սարքերն օգտագործվել են տիեզ. հետազոտություններում (մեծ ճշգրտությամբ որոշվել Վեներայի մթն–ի դինամիկ տարրերը):

ՀԽՍՀ (1988) և Ուկրաինայի (1989) Պետ. մրց–ներ, ԽՍՀՄ «Պատվո նշան» (1981), Հոկտ. հեղ–յան (1986), Ժողդ–ների բարեկամության (1985), ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (1999), ԼՂՀ «Մեսրոպ Մաշտոց» (2005), Իտալիայի Համերաշխության աստղի (2004), Ֆրանսիայի Ակադեմ. դափնու (2005) շքանշաններ, Յ. Ա. Գագարինի անվ. (1987), ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1–ին աստիճանի (2012) մեդալներ:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Սարգիս Սողոմոնի (1900–1984), գեն–լեյտ. (1945): ԽՄ հերոս: 1922–38–ին ծառայել է Հայկ. լ–հրաձգ. դիվիզիայում: ՀՄՊ–ի ժամանակ՝ հրաձգ. դիվիզիայի, 1943–ից՝ կորպուսի հրամ.: Մասնակցել է Վիլա–Օդերի գետանցմանը, Բեռլինի համար մղված մարտերին, Չեխոսլովակիայի ազատագրմանը: Նրա կորպուսի կազմում է մարտնչել ԽՍՀՄ–ում կազմավորված չեխոսլովակյան 1–ին բրիգադը (հրամ.՝ գեն. Լ. *Սվոբոդա*): Զորացրվել է 1953–ին:

Լենինի (4), Կարմիր դրոշի (4), Սուվորովի 2–րդ աստիճանի (4) շքանշաններ:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Սիմոն Գևորգի (ծ. 1997), ծանրորդ: Օլիմպ. խաղերի արծաթե (2016), Եվրոպայի առաջնության բրոնզե (2016) և ոսկե (2017), Երիտասարդ. օլիմպ. խաղերի ոսկե (2014) մեդալակիր: ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1–ին աստիճանի մեդալ (2016):

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Սուրեն Մկրտչի (1946–2003), ռադիոտեխնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (2002), պրոֆ. (2002):1978–ից՝ Ռադիոֆիզ. չափումների ԳՀԻ փոխտնօրեն: Աշխ–ները վերաբերում են անտենաների չափագիտ–յան, ռադիոտեղորոշման հարցերին, ԳԲՀ ալիքների սարքերի ստեղծման խնդիրներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1986):

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Վալերի Հակոբի (ծ. 1949), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1990), պրոֆ. (1992): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006): Աշխ–ները վերաբերում են կոմպլեքս փոփոխականների ֆունկցիաների տեսությանը (աստիճան. շարքերի եզակիությունների տեղաշարժման հարցեր, ամբողջ ֆունկցիաների միակության արդյունքներ):

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Վիլենա Հակոբի (ծ. 1939), քիմիկոս–տեխնոլոգ: Տեխ. գիտ. դ–ր (1998), պրոֆ. (1999): Աշխ–ները վերաբերում են մետաղ պարունակող ՀՀ հանքերի մշակման քիմիամետաղագործ. շարժընթացներին: Մշակել է քրոմ պարունակող հանքերի մետաղաջերմ. վերականգնման եղանակ՝ ֆեռոքրոմի և քրոմ պարունակող լիգերանտների ստացումով:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Տիգրան Արմանի (ծ. 1970), երգիչ (բաս): Հայկ Ա. *Մարտիրոսյանի* եղբայրը: Մոսկվայի Նոր օպերայի, 1995–ից՝ Մեծ թատրոնի մեներգիչ (Ռամֆիս՝ Ջ. Վերդիի «Աիդա», Ռայմոնդո՝ Գ. Դոնիցետտիի «Լուչիա դի Լամերմուր», ևն): Հանդես է եկել նաև Միլանի «Լա Սկալա», Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերա», Հյուսթոնի Մեծ օպերա, Լոնդոնի «Քովենտ Գարդեն» և այլ թատրոններում: Ռուս. երաժշտության (Մոսկվա, 1993, 1–ին մրց.), Պ. Ի. Չայկովսկու անվ. X (Մոսկվա, 1994, դիպլոմ և Հատուկ մրց.), Բ. Խրիստովի (1996, Սոֆիա), Մ. Անդերսոնի (1999, Մերիլենդ), օպեր. 2–րդ (երեքն էլ՝ 1999, Շիզուոկա, 2–րդ մրց–ներ) և այլ միջազգ. մրցույթների դափնեկիր:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Տիգրան Սերյոժայի (ծ. 1977), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (2013), պրոֆ. (2015): Աշխ–ները վերաբերում են ջր. ռեսուրսների կառավարման խնդիրներին:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆՆԵՐ (Մարտիրոսաշվիլի), **Շանշյան–Մարտիրոսյաններ**, հայ իշխան. տոհմ Վրաստանում XVII–XIX դդ–ում: Մինչև XVIII դ–ի վերջը Վրաց արքունիքում ժառանգաբար վարել են քարտուղար–դատավոր–դպիրի (մդիվան–մծիգնորարի), հետագայում՝ նաև դպրապետի, գանձապետի պաշտոններ: 1656–ին ժառանգ. տիրույթ են ստացել Սոմաների գ–ը, հետագայում՝ նաև կալվածքներ Միջին Քարթլիում, Ալի գետի հովտում: Առավել նշանավորներից է բանաստեղծ, նկարիչ **Բեգթաբեգ Մ.** (դատավոր–դպիր՝ 1661–97). պատկերազարդել է Շ. Ռուսթավելու «Ընձենյավորը» (1680): XVIII դ–ի սկզբից Բեգթաբեգի ճյուղը կրել է Բեգթաբեգյան (Բեգթաբեգաշվիլի) ազգանունը (տես *Բեկթաբեկյաններ*):

ՄԱՐՏԻՐՈՍՈՎ Գեորգի Գենադիի (ծ. 1932), նավաշինության բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1966), պրոֆ. (1996): ՌԴ վաստ. շինարար (1992): Աշխ–ները վերաբերում են նավերի կառավարման տեխ. խնդիրներին և էկոլոգիապես անվտանգ նավերի էներգետիկ սարքավորումների ստեղծման հարցերին:

ԽՍՀՄ ՆԽ (1974), ՌԴ Պետ. (1998) մրց–ներ, Մալթայի ուխտի (2000) և մի շարք այլ շքանշաններ:

ՄԱՐՏԻՐՈՍՈՎ Էդուարդ Գեորգիի (ծ. 1938), մարդաբանության ոլորտի գիտնական: Կենսբ. գիտ. դ–ր, պրոֆ.: ՌԲՆԳԱ ակադ. (2000): ՌԴ ֆիզկուլտուրայի վաստ. գործիչ: Աշխ–ները վերաբերում են մարզ. բժշկության և կենսբ–յան հարցերին:

ՄԱՐՏԻՐՈՍՈՎ Լեոնիդ Արմենակի (ծ. 1939), ՀՀ բանակի գեն–լեյտ. (2010): 1981–85–ին՝ ԳԴԵՄՀ–ում խորհրդ. զորախմբավորման բրիգադի հրամ.: 1993–97–ին՝ ՀՀ ՋՈՒ ԳՇ օպերատիվ վարչության պետ, 1997–2000–ին, միաժամանակ՝ ԳՇ պետի տեղակալ, 2000–14–ին՝ ՋՈՒ գլխ. ռազմ. տեսուչի 1–ին տեղակալ: Մասնակցել է Արցախյան ազատագր. պատերազմին: Մեծ ներդրում ունի ՀՀ ՋՈՒ օպերատիվ ռազմարվ–ի զարգացման գործում:

ՄԱՐՏԻՐՈՍՈՎ Ռոլան Գուրգենի (ծ. 1935), ավիակոնստրուկտոր: Պ. Օ. *Սուխոյի* անվ. ՓԿԲ–ի գլխ. կոնստրուկտոր (1985): Մասնակցել է Սու մակնիշի ինքնաթիռների (Սու–7, –15, –24, –25, –27, –27Կ) ստեղծմանը: «Ռուսական հրաշք», «XXI դ–ի ինքնաթիռ» Սու–34–ի նախագծի ղեկ. և գլխ. կոնստրուկտոր:

ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹՅՈՒՆ (լատ.՝ martyros – վկա), **նահատակություն**, ինքնազոհություն հանուն քրիստ. հավատի: I–IV դդ–ում (մինչև քրիստոնեության պետ. կրոն հռչակելը) հալածվող քրիստոնյաներից առավել մոլեռանդները, մերժելով ուրացումը, գերադասել են Մ.: Եկեղեցին Մ. համարել է «արյամբ մկրտություն» մարտիրոսներին «խոստանալով երկնային երանելի կյանք», իսկ Մ–յան օրը հռչակել է նահատակի «ծննդյան օր» և ներառել իր տոնացույցներում: Եկեղեցին IV դ–ում սահմանել է մարտիրոսների հիշատակի օր: Փխր. առումով՝ Մ. է նաև հայրենիքի, նվիրական գաղափարի համար նահատակությունը:

ՄԱՐՏԿՈՑ, 1. (տեխ.) մի քանի միատիպ տարրերի (արդ. սարքեր, սնուցման աղբյուրներ, տաքացուցիչ հարմարանքներ ևն) միացումը որոշակի համակարգում՝ համատեղ գործողության համար, օր.՝ շոգեջեռուցման մի քանի ռադիատորներից կազմված Մ., կուտակիչ Մ. ևն: 2. (Ռազմ.) հրետան. գնդի կրակ. և մարտավար. ստորաբաժանում: Կազմված է 2–3 հրանոթներից (ականանետներ, ռեակտիվ հրետանի կամ կառավարվող հակատանկ. հրթիռներ):

«ՄԱՐՏԿՈՑ», քաղ., հաս., գր. պարբերաթերթ (1932–34, Փարիզ, 1934–ին՝ «Ամրոց»): Արևմտահայ ազատագր. ուխտի պաշտոնաթերթ: Խմբագրակազմ:

«ՄԱՐՏՆՉՈՂ ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՄԵՒԼԻԹՅՈՒՆ», հակակրոն. կազմ–յուն ԽՍՀՄ–ում: «Բեզբոժնիկ» («Անաստված») թերթի (1922–41) բարեկամների ընկ–ը 1925–ին 1–ին համագումարում հիմնադրել է Անաստվածների միությունը, 2–րդ համագումարում (1929)՝ «Մ. ա. մ.»: 1941–ին այն ունեցել է ավելի քան 3,5 մլն անդամ: ՀՄԽՀ–ում նման միություն հիմնադրվել է 1927–ին. գործել է 1929–41–ին: Հրատարակել է «*Անաստված*» հանդեսը:

ՄԱՐՏՈՒՆԻ, գետ ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Սևանա լճի ավազանում: Սկիզբ է առնում Վարդենիսի լ–շղթայի հս. լանջերից՝ 3300 *մ* բարձր–ից: Երկ.՝ 27,6 *կմ*, ավազանը՝ 101 *կմ*², ջրի միջին ծախսը՝ 1,44 *մ*³/վ: Գետահովիտը վերին հոսանքում V–աձև է, միջինում՝ տաշտակաձև: Մնումը հիմնականում ձնաանձրևային (58 %) է, վարարումը՝ ապրիլ–մայիսին: Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով:

ՄԱՐՏՈՒՆԻ, ք. (1963–ից) ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Սևանա լճի հվ–արմ. ափին՝ Վարդենիսի լ–շղթայի հս. ստորոտին: Բն.՝ 12,2 հզ. (2012): Կան վերամշակող արդ–յան, շինանյութերի, քիմ. և սննդի արտադր–յան ձեռն–ներ: Մ–ում և շրջակայքում պահպանվել են հնագույն բնակատեղի (մ. թ. ա. II–I հզ–ամյակ), կիկլոպ. ամրոցի (մ. թ. ա. I հզ–ամյակ) մնացորդներ, խաչքարեր (XV–XVII դդ.), Սբ Աստվածածին եկեղեցին. վերակառուցվել է 1886–ին, վանք–սրբատեղին՝ XX դ–ում, ևն:

ՄԱՐՏՈՒՆԻ (1926–ից, նախկինում՝ Խոնաշեն), ք. (1991–ից) ԼՂՀ–ում՝ Ստեփանակերտից 41 *կմ* արլ.՝ 400 *մ* բարձր–յան վրա՝ Խոնաշեն գետի ձախ ափին, համանուն շրջանի վարչ. կենտրոնը: Անվանվել է Ալեքսանդր *Մյասնիկյանի*՝ «Մարտունի» ծածկանունով: Բն.՝ 5,4 հզ. (2010): Կան վերամշակող արդ–յան ձեռն–ներ: Զբաղվում են նաև այգեգործությամբ, պտղաբուծությամբ և հացահատիկ. բույսերի մշակությամբ: Քաղաքում են Սբ Ներսես Մեծ եկեղեցին (XX դ.), Մոնթե Մելքոնյանի հուշարձանը:

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ, վտմ: Կազմավորվել է 1991–ին՝ ԼՂՀՄ–ի նույնանուն շրջանի հիմքի վրա: Տարածքը՝ 951,16 *կմ*², բն.՝ 23,8 հզ. (2014): Վարչ. կենտրոնը՝ *Մարտունի* ք.: Տարածքի զգալի մասը հարթավայրային է: Միջին բարձր.՝ 1000–1500 *մ*: Բնորոշ են նախալեռնատափաստան. և անտառ. լանդշաֆտները: Ընդերքը հարուստ է կրաքարի, բազալտի, գրանիտի, կավի պաշարներով: Տնտ–յան հիմքը գղտ–յունն է:

ՄԱՐՐԻ (Murray) Ժոզեֆ Էդուարդ (1919–2012), ամերիկացի վիրաբույժ: Աշխ–ները վերաբերում են օրգանների փոխպատվաստման խնդիրներին: Մշակել է փոխպատվաստված օրգանների անջատման ռեակցիայի կանխման մեթոդ: Աշխարհում առաջինն է իրականացրել երիկամների փոխպատվաստում (երկվորյակների միջև):

Նոբելյան մրց. (1991, Է. Դ. *Թոմասի* հետ):

ՄԱՐՑ, գետ Լոռու մարզում, Դեբեդի աջ վտակը: Սկիզբ է առնում Գուգարաց լ–շղթայի հվ–արլ. լանջերից: Երկ.՝ 22 *կմ*, ավազանը՝ 252 *կմ*², ջրի միջին ծախսը՝ 2,47 *մ*³/վ (Թումանյան ք.), տարեկան հոսքը՝ 77,5 մլն *մ*³: Թումանյան ք–ի մոտ միախառնվում է Դեբեդին: Մնումը հիմնականում անձրևային (42 %) և հալոցքային (32 %) է, վարարումը՝ մարտ–հունիսին:

ՄԱՐՑԵՎԻՉ Էդուարդ Եվգենևիչ (1936–2013), ռուս. դերասան: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1987): 1959–ից՝ Մոսկվայի Վ. Մայակովսկու անվ., 1969–ից՝ Փոքր թատրոնների դերասան (Համլետ՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», Էդիպ՝ Սոֆոկլեսի «Էդիպ արքա», Ֆիեսկո՝ Ֆ. Շիլլերի «Ֆիեսկոյի դավադրությունը Ջենովայում», ևն): Նկարահանվել է «Հայրեր և որդիներ», «Պատերազմ և խաղաղություն», «Կարմիր վրան», «Իդեալական ամուսին», «Մայո Ռորինա», «Երիտասարդ Ռուսաստան» (հեռուստաֆիլմ) և այլ կինոնկարներում:

ՌԴ վաստ. գործ. (2007):

ՄԱՐՑԻՆԿԱՎԻՉՅՈՒՍ Յուստինաս (1930–2010), լիտվացի բանաստեղծ:

Լիտվ. ԽՍՀ ժող. բանաստեղծ (1978): Հեղինակ է «Քսաներորդ գարունը» (1956), «Արյուն և մոխիր» (1960, հակաֆաշիստ.), «Պատը» (1965) պոեմների, «Մինդաուգաս» (1968), «Տաճար» (1971), «Մաժվիդաս» (1977) պատմ. եռերգության, նաև «Հաց բաժանող ձեռքեր» (1963), «Կյանքի մեղմ հպում» (1978), «Carmina minora» (2000) բանաստեղծությունների ժող-ների, «Օրագիր առանց տարեթվի» (1981) քնար. մանրապատումների ժող-ի: Հայ. հրատարակվել է «Պրոմեթևսի դատը: Իկարոս: Դրամաներ» (1987) ժող-ը:

Լիտվ. ԽՍՀ (1957, 1969), Լիտվայի Հանրապետության (2001) Պետ. մրց-ներ:

ՄԱՐՑԻՆՈՎՍԿԻ Եվգենի Իվանովիչ (1874–1934), ռուս. մակաբուծաբան, վարակաբան: Ռուսաստանի գիտ. վաստ. գործիչ (1934): Աշակել է Ռուսաստանում մալարիայի դեմ պայքարի գիտ. սկզբունքները: Աշխ-ները վերաբերում են մակաբուծաբանության, վարակիչ հիվանդությունների, համաճարակաբանության (հատկապես՝ մալարիայի), առողջապ-յան կազմակերպման հարցերին: Տրոպիկ. ինստ-ի հիմնադիր-ղեկ. (1920–34, 1934–ից՝ Մ–ի անվ.):

ՄԱՐՑԻՆԻ, Մարաթուկ, Մարութկասար, Սասնա լ-ների ամենաբարձր լ-գագաթը (2967 *մ*)՝ Հայկ. Տավրոսի լեռն. համակարգի արլ-ում:

ՄԱՐՔՈՒԹԱՎԱՆՔ, Մարութա Բարձր Աստվածածին վանք, ճարտ. համալիր Տուրուբերան նահանգ-ում՝ Մարութա լ-ան գագաթին: Սասունի նշանավոր ուխտատեղին է: Ըստ «Սասնա ծռեր» էպոսի՝ կառուցել են Սանասարն ու Բաղդասարը, վերակառուցել է Դավիթը: Կազմված է ոչ մեծ միանավ եկեղեցուց:

ՄԱՐՔՈՒԹՅԱՆ Արմեն Նաիրիի (ծ. 1951), դերասան: ՀՀ վաստ. արտիստ (2003): Ալլա *Վարդանյանի* ամուսինը: 1971–ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասան (Ձեմալ փաշա՝ Պ. Զեյթունցյանի «Հարյուր տարի անց», Ջոն արքա՝ Վ. Շեքսպիրի «Ջոն արքա», Վանահայր՝ Լ. Շանթի «Հին աստվածներ», Էլիզբարով՝ Շիրվանզադեի «Պատվի համար»): Նկարահանվել է «Հուսո աստղ», «Աշնանային ծիրան», «Պահանջվում է միլիոնատեր» ֆիլմերում, հեռուստասերիալներում:

«Արտավազդ» մրց. (2008, 2012), ՀՀ «Մովսես Խորենացի» (2011), ՀԹԳՄ ոսկե (2012) մեդալներ:

ՄԱՐՔՈՒԹՅԱՆ Արտավազդ (1912–1984), ֆուտբոլիստ, թենիսիստ: 1930–42–ին խաղացել է Սիրիայի ֆուտբոլի ազգ. հավաքականում: «Սիրիայի ֆուտբոլի արքա»: 17 անգամ դարձել է Սիրիայի թենիսի չեմպիոն:

ՄԱՐՔՈՒԹՅԱՆ Լեմվել Մարտիրոսի (1904–1968), թարգմանիչ: Թարգմանել է Օ. դը Բալզակի «Խորտակված պատրանքներ» (1948), «Տասներեքի պատմությունը», «Լքված տունը», «Երեսնամյա կինը» (երեքն էլ՝ 1956), «Կուրտիզանուհիների պերճանքն ու թշվառությունը» (1959) և այլ գործեր, Ռ. Ռոլանի «Ժան Քրիստոֆ» (Հ. Լևոնյանի հետ, հ. 1–5, 1966–71) վեպը:

ՄԱՐՔՈՒԹՅԱՆ Կոստանդին Հովհաննեսի (1917–2009), էներգետիկ-շինարար: ՀՀ վաստ. շինարար (1957), ԽՍՀՄ պատվ. էներգետիկ: 1961–65–ին՝ ՀԽՍՀ շին-յան նախարար: 1965–78–ին՝ Հայհիդրոէներգաշինի վարչության պետ, 1978–84–ին՝ ՀԽՍՀ պետշինի նախագահ: Նրա ղեկավարությամբ են կառուցվել Գյումուշի, Աթարբեկյանի, Տաթևի և Շամբի ջրէկները, Հրազդանի, Երևանի, Վանաձորի ջէկները, ՀԱԷԿ-ը, «Զվարթնոց» օդանավակայանը, Երևանի մարզահամերգ. համալիրը:

ՄԱՐՔՈՒԹՅԱՆ Հարություն Տիրանի (ծ. 1956), ազգագրագետ, պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (2007): Տիրան *Մարությանի* որդին: Աշխ-ները վերաբերում են հայկ. ինքնությանը, ցեղասպանության հիշողությանը և Արցախյան շարժմանը:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2014):

ՄԱՐՔՈՒԹՅԱՆ Մանվել Մարտիրոսի (1901–1986), դերասան, ռեժ., դրամատուրգ: Դերերից են՝ Էլիզբարով (Շիրվանզադեի «Պատվի համար»), Պեպո (Գ. Սունդուկյանի «Պեպո»), Օթելլո (Վ. Շեքսպիրի «Օթելլո») ևն: Հեղինակ է պիեսների, նաև «Երբ իջնում է վարագույրը» (հ. 1, 2, 1969, 1971), «Ինչ է պատահում բեմի վրայ, բեմի ետև և բեմից դուրս» (1986) գրքերի:

ՄԱՐՔՈՒԹՅԱՆ Սեդա Արշակի (1925–1991), այգեգործության, կենսաքիմիայի և ֆիզիոլոգիայի բնագավառի գիտնական: Կենսբ. գիտ. դ-ր (1976): Աշխ-ները վերաբերում են զարգացման վաղ փուլում խաղողի վազի հիբրիդների ցրտադիմացկունության որոշման և գնահատման եղանակների մշակմանը, կենսաքիմ. շարժընթացներում պարարտանյութերի չափաքանակի ազդեցության, խաղողի վազի տարիք. կենսաքիմիայի հարցերին:

ՄԱՐՔՈՒԹՅԱՆ Տիրան Հարությունի (1911–2007), ճարտ.: Ճարտ-յան դ-ր (1992): ՀՀ վաստ. շինարար (1961): Հարություն *Մարությանի* հայրը: Հեղինակ է մի շարք գյուղերի և ավանների (Զարենցավան, Արզնի, Գագարին, Սիսիանի աջափնյակ, Շինուհայր, Գառնի ևն) գլխ. հատակագծերի: Աշակել է Զվարթնոցի տաճարի և 15 այլ ավերված եկեղեցիների վերակազմության առաջարկներ: Հեղինակ է «Տայքի ճարտարապետական հուշարձանները» (1972), «Ավանի տաճարը և համանման հուշարձաններ» (1976), «Խորագույն Հայք» (1978), «Հայ դասական ճարտարապետության ակունքներում» (2003) և այլ աշխ-ների:

ՄԱՐՔՈՒԽՅԱՆ Արարատ Հովսեփի (1907–1983), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (1953), պրոֆ. (1954): Աշխ-ները վերաբերում են գյուղացիության պատմության, գղտ. արտադր-յան զարգացման հարցերին:

ՄԱՐՔՈՒԽՅԱՆ Դերենիկ Հովսեփի (1910–1950), քիմիկոս: Քիմ. գիտ. դ-ր (1944), պրոֆ.: Հայաստանում կոմպլեքս միացությունների քիմիայի հիմնադիրներից: 1937–50–ին՝ ԽՍՀՄ ԳԱ քիմիայի ինստ-ի հայկ. մասնաճյուղի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են պղնձի կոմպլեքս միացությունների (ամինա և անիլինային) ուսումնասիրությանը:

ՄԱՐՔՈՒԽՅԱՆ Հրայր Թորգոմի (1928–1998), հաս–քաղ. գործիչ: ՀՅԴ բյուրոյի անդամ (1963): 1964–ից՝ Լիբանանում: Եղել է Թեհրանի «Արարատ» մարզ. միության հիմնադիրներից և նախագահը: 1988–ից ղեկավարել է ՀՅԴ «Դեպի երկիր» ծրագրի իրականացման և հայրենիքում կուս-յան ներկայության բացահայտման գործընթացը:

ՄԱՐՔՈՒԽՅԱՆ Ռուբեն Արամի (ծ. 1934), ռեժ., գրող: Պրոֆ. (2006): 1961–72–ին (տարբեր տարիների)՝ ՀԽՍՀ հեռուստառադիոպետկոմի, ԵԴԹ, «Երևան» կինոստուդիայի, 1973–88–ին՝ ԵՏԹ ռեժ. (1988–96–ին՝ գեղ. ղեկ. և տնօրեն): Բեմադրել է Կ. Գոցցիի «Երեք նարինջ» (1971), «Եղեգնուհի», «Անահիտ» (1982, 1992, երկուսն էլ՝ ըստ Ղ. Աղայանի, ԵՏԹ) և այլ պիեսներ: Հեղինակ է պիեսների, նաև «Չիկարելիի արկածները» (1988, ՀԳՄ և ՀԼԿԵՄ մանկ. լավագույն գրքի 1–ին մրց.), «Մուկիկը» (2000), «Հեքիաթների տոնավաճառ» (2003), «Զրույցներ թատրոնի մասին» (2006) և այլ գրքերի: ՀԳՄ Վ. Աանայանի անվ. գր. (2013), ՀԹԳՄ «Արտավազդ» (2015) մրց-ներ:

ՄԱՐՔՈՒԿԻ, ճապոնացի նկարիչ ամուսիններ: **Իրի Մ.** (1901–1995), 1945–ին ղեկավարել է Ճապոնիայի առաջադեմ նկարիչների միավորումը: **Կինը՝ Տոսիկո Մ.** (1912–2000), ամուսնու հետ ստեղծել է «Հիրոսիմա» (1947–ից)՝ աշխարհում ճանաչված նկարաշարը:

ՄԱՐՔՍ (Marx), ամերիկացի դերասաններ, եղբայրներ՝ **Չիկո** (Լեոնարդ) **Մ.** (1887–1961), **Հարպո** (Ադոլֆ, 1911–ից հետո՝ Արթուր) **Մ.** (1888–1964), **Գրաուչո** (Ջուլիուս) **Մ.** (1890–1977): Նրանց մասնակցությամբ ֆիլմերը հարուստ են անմիտ հումորով, պարադոքս. իրավիճակներով, երաժշտ. էքսցենտրիկ հնարքներով արսուրդ («Բադապուր», 1933, «Երեկոն օպերայում», 1935, «Օրը կրկեսում», 1939, «Գիշերը Կասաբլանկայում», 1946, «Մարդկության պատմություն», 1957, ևն):

ՄԱՐՔՍ Կարլ (1818–1883), գերմանացի փիլ., տնտեսագետ, գիտ. կոմունիզմի հիմնադիրը, քաղ. գործիչ, որը լուրջ ազդեցություն է թողել XIX դ–ի քաղ. կյանքի վրա: Մ–ի աշխ-ներով փիլ-յան մեջ ձևավորվել են դիալեկտիկ. և պատմ. մատերիալիզմը. տնտեսագիտ-յան մեջ՝ հավելյալ արժեքի, քաղ-յան մեջ՝ դասակարգ. պայքարի տեսությունները: Դրանց հիման վրա ձևավորվել է կոմ. և սոց. շարժման գաղափարախոսությունը, որը հետագայում կոչվել է *մարքսիզմ*: Հեղինակ է «Տնտեսագիտական-փիլիսոփայական ձեռագրեր» (1844), «Սուրբ ընտանիք» (1845), «Գերմանական գաղափարախոսություն» (Ֆ. *Էնգելսի* հետ, 1845–46), ինչպես նաև «Թեզիսներ Ֆոյերբախի մասին» (1845), «Փիլիսոփայության աղքատությունը» (1847) և այլ աշխ-ների: Մ. եղել է 1-ին Ինտերնացիոնալի կազմակերպիչն ու առաջնորդը (1864, Լոնդոն): 1867-ին լույս է տեսել Մ–ի գլխ. աշխ-յան՝ «Կապիտալ»–ի 1–ին հատորը. 2–րդ և 3–րդ անավարտ հատորները հրտ-յան է պատրաստել Ֆ. Էնգելսը 1885 և 1894–ին: «Կապիտալը» բնագրից հայ. թարգմանել է Թադևոս Ավդալբեգյանը: 1845–48–ին Բրյուսելում Մ. մասնակցել է «Կոմունիստների միջազգային միության» աշխ-ներին. Ֆ. Էնգելսի հետ գրել է միության ծրագր. փաստաթուղթը՝ «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» (1848):

ՄԱՐՔՍԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔ, *մարքսիզմի* 3 բաղկացուցիչնե-

րից գլխավորը, որը հիմնավորում է հանրային հարստության ստեղծման գործում բանվոր դասակարգի պատմ. դերը: Մ. տ. ու–ի մեթոդաբանության սկզբնաղբյուրներն են Ա. Սմիթի և Դ. Ռիկարդոյի դաս. քաղաքատնտ–յունը, գերմ. դաս. փիլ–յունը, ուտոպիական սոցիալիզմը: Իր ուսմունքում Կ. Մարքսը զարգացրել է բազիսի (հաս–յան տնտ. կառուցվածքի) և վերնաշենքի գաղափարը, ձևակերպել արժեքի օրենքը, տարբերակել «սպառողական արժեք» ու «փոխանակային արժեք» հասկացությունները: Ըստ Կ. Մարքսի՝ հավելյալ արժեքը բանվորների չվճարված աշխ–ի արդյունքի արժեքն է, շահագործման նորման՝ հավելյալ արժեքի հարաբերությունը փոփոխ. կապիտալին, փողը՝ համընդհ. վճարամիջոց, որը չի կարող գոյություն ունենալ առանց ապրանքափոխանակության: Կապիտալը համարել է հավելյալ արժեք բերող փող, զարգացրել «բացարձակ»՝ վատորակ կամ իրացման շուկաներից հեռու գտնվող հողերից ստացվող ռենտայի գաղափարը: Տնտ. ճգնաժամը պայմանավորել է արտադր–յան ընդլայնման ժամանակ արդյունավետ պահանջարկի ավտոմատ աճի բացակայությամբ:

ՄԱՐՔՍԻԶՄ, փիլ., տնտեսագիտ. և սոցիալ–քաղ. ուսմունք: Առաջադրել են Կ. *Մարքսը* և Ֆ. *Էնգելսը*: Ըստ Մ–ի՝ հաս–յունը օրգանիզմ է, որի կառուցվածքում արտադր. ուժերը պայմանավորում են արտադր. հարաբերությունները, սեփականության ձևերը, որոնք էլ իրենց հերթին պայմանավորում են հաս–յան դասային կառուցվածքը, քաղ–յունը, պետականությունը, իրավունքը, բարոյականությունը, փիլ–յունը, կրոնը, արվ–ը: Մ. էական ազդեցություն է ունեցել XIX դ–ի վերջ–XX դ–ի հաս. մտքի զարգացման վրա: Մ–ում բացարձակացվել է սոցիալ. հակամարտությունների, դասային պայքարի և բռնության դերը, հերքվել է բուրժ. հաս–յան էվոլյուցիայի հնարավորությունը, մերժվել համամարդկային բարոյականությունը ևն: Մ. դարձել է սոցիալ–դեմոկրատ. շարժման գաղ. հիմքը: XX դ–ի սկզբին առաջացել են Մ–ի հեղ. (Ռ. Լյուքսեմբուրգ, Վ. Ի. Լենին և ուր.) և ռեֆորմիստ. (Է. Բեռնշտեյն, ավստրոմարքսիզմ և ուր.) հոսանքները, իսկ 1917–ից հետո վերջնականապես սահմանազատվել է արմ. սոցիալ–ժողովրդավարության (Կ. Կաուցկի, Ռ. Գիլֆերդինգ և ուր.) և ռուս. բոլշևիզմի (Վ. Ի. Լենին, Լ. Դ. Տրոցկի) միջև, որը Մ. հայտարարել է ԽՍՀՄ պետ. փիլ. գաղափարախոսություն (մարքսիզմ–լենինիզմ, որը դարձավ միջազգ. կոմ. շարժման գաղափարախոսությունը): Ի հակակշիռ մի երկրում սոցիալիզմի կայացման Ի. Վ. Ստալինի և Ն. Ի. Բուխարինի որդեգրած ուղղության՝ Լ. Դ. Տրոցկին պաշտպանել է «Համաշխարհային հեղափոխության» գաղափարը: ԵՀՊ–ից հետո «երրորդ աշխարհի» երկրներում ազդեցիկ է դարձել *Մաո Ցզեդունի* «ժողովրդական հեղափոխության» հայեցակարգը՝ կոմկուսի գլխավորությամբ: XX դ–ում Արևմուտքում կապիտալիստ. հաս–յան քննադատության հետևանքով առաջացել են նորմարքսիզմի տարբեր ուղղություններ (ֆրանկֆուրտյան դպրոց, նոր ձախեր ևն):

ՄԱՐՔՍԻԶՄ–ԼԵՆԻՆԻԶՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ ԽՄԿԿ ԿԿ–ին առընթեր (ՄԼԻ), կուս. կենտր. ԳՀՀ: Հիմնադրվել է 1931–ին Մոսկվայում՝ Մարքսի ու Էնգելսի և Լենինի ինստ–ների միավորումով: 1956–ից Մ–լ. ի. մասնաճյուղեր է ունեցել Ս. Պետերբուրգում և ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում:

Մ–լ. ի. հայկ. մասնաճյուղն ստեղծվել է 1948–ին Երևանում (հետագայում՝ ՀԿԿ ԿԿ ինստ.): Լույս են ընծայել «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր» (1967) աշխ–ը, Ս. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ա. Մյասնիկյանի, Բ. Կնունյանցի, Մ. Կապյանի և ուր. տես. ժառանգությունը, մարքսիզմ–լենինիզմի դասականների երկերի հայ. թարգմ–յունները, կազմել և հրատարակել են փաստաթղթերի, վավերագրերի ժող–ներ ևն:

ՄԱՅԱՌԱԽՈՋԵՐ, **վայրենակերպներ**, կրծողների կարգի կաթնասունների ընտանիք: Մարմնի երկ.՝ 60–90 (երբեմն՝ 1 *մ*), պոչինը՝ մինչև 25 *սմ*: Մեջքը և կողքերը ծածկված են ասեղներով: Հայտնի է 11 տեսակ, ՀՀ–ում՝ 1՝ ինդ. մացառախոզը:

ՄԱՅԱՌԵՂԵԳ (Sparganium), **օձի թուր**, մացառեղեգազգիների ընտանիքի բազմամյա ջրաճահճ. խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 20 տեսակ, ՀՀ–ում՝ 4՝ գրեթե բոլոր մարզերում: Փոքրիկ Մ. գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՄԱՅԵՍՏԱ, ջերմուկաբուժ. առողջավայր Կովկասի Սևծով. ափին (Կրասնոդարի երկրամասում)՝ Սոչիի առողջարան. շրջանում: Կան ծծմբաջրածնային տաք ջրեր:

ՄԱՅՈՅԱՆ Ստեփան Գրիգորի (1923–2010), քիմիկոս–օրգանիկ: Քիմ. գիտ. դ–ր (1966), պրոֆ. (1967): ՀՀ ԳԱԱ ակադ. (1982, թղթ. անդամ՝ 1974–ից), ՕՔԻ տնօրեն (1967–88): Աշակել է «ոչ դասական» մոնոմերների (չզուգորդված դիենային, տրիենային, ենինային, դիենային ևն) ցիկլոպոլիմերման գիտ. հիմունքները: Առաջարկել է մի շարք տարացիկլ. միացությունների (պիրազոլիններ, պիրազոլներ, ֆտալաններ ևն) ստացման սկզբունքորեն նոր եղանակներ, պարզաբանել մետաղակոմպլեքս. կատալիզորդների ներկայությամբ ացետիլեն. միացությունների փոխարկումների առանձնահատկությունները, հայտնաբերել ռադիկալ. համալիգոմերման ռեակցիան:

ԳԴեհՀ ԳԱ պատվ. անդամ: ԽՍՀՄ Ժողդ–ների բարեկամության շքանշան, ՀՀ «Անանիա Շիրակացի» մեդալ (2003):

ՄԱՅՈՒՄԱՅՐԱ, Յորիցունե (1907–2001), ճապոնացի կոմպոզիտոր: Ճապոնացի առաջին ազգ. ավանգարդիստ կոմպոզիտորը: Ժող. երաժշտության տարրերը համադրել է դոդեկաֆոն. արմ. տեխնիկային («Թեմա վարիացիաներով»՝ դաշնամուրի և նվագախմբի համար, 1951, «Կերպափոխումներ»՝ ըստ հնագույն ճապոն. մեղեդու, սոպրանոյի և նվագախմբի համար, 1954, «Ասք Գինձիի մասին», օպերա, 1997, ևն):

ՄԱՅՈՒՀՈ Բասյո (1644–1694), ճապոնացի բանաստեղծ: Հոկկու ժանրի հիմնադիրը: Հեղինակ է փիլ. քնար. գործերի (մոտ 2 հզ.): Մ–ի և նրա աշակերտների ժառանգությունը կազմել է 7 անթոլոգիա, այդ թվում՝ «Ձմեռային օրեր» (1684), «Գարնանային օրեր» (1686), «Կապիկի ծղոտե թիկնոցը» (գիրք 1, 2, 1691, 1698) ժող–ները, «Ամայացած դաշտ» (1689), «Մի պարկ ածուխ» (1694):

ՄԱՈՒԶԵՐ (գերմ.՝ Mauzer), ինքնաշխատ ատրճանակ, արտադրվել է 1896–ից: Տրամաչափը՝ 7,63 *մմ*, պահեստատուփի տարողությունը՝ 6, 10, 20 փամփուշտ: Ստեղծել են Վիլհելմ (1834–1882) և Պաուլ (1858–1914) Մաուզեր եղբայրները: Թողարկվել են նաև 6,35 և 7,65 *մմ* տրամաչափերի Մ–ներ:

ՄԱՈՒԼՅՈՆՈՎ Սիրբայ (1922–1993), ղազախ բանաստեղծ: Ղազախ. ԽՍՀ ժող. գրող (1990): Հեղինակ է «Կեսօր» (1966), «Ապրիլյան անձրև» (1967), «Կարմիր արչա» (1969), «Փայլատակություն» (1976) քնար. բանաստեղծությունների ժող–ների: Ղազախ. ԽՍՀ Պետ. մրց. (1970):

ՄԱՈՒՆԱ ԼՈԱ, (Mauna Loa), վահանաձև (հավայան) տիպի գործող հրաբուխ Խաղաղ օվկ–ի Հավայի կղզում: Բարձր.՝ 4169 *մ*: Երկրագնդի՝ ծավալով ամենախոշոր (ներառյալ ստորջրյա մասը) հրաբուխն է:

ՄԱՈՒՆԱ ԿԵԱ, (Mauna Kea), վահանաձև (հավայան) տիպի հանգած հրաբուխ Խաղաղ օվկ–ի Հավայի կղզում: Բարձր.՝ 4205 *մ* (հարաբեր. բարձր. օվկ–ի հատակից մինչև գագաթը՝ 10205 *մ*): Խառնարանը չի պահպանվել:

ՄԱՈՒՆԹ ԳՐԵՀԵՄԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ (անգլ.՝ Mount Graham Observatory) (ԱՄՆ), Արիզոնայի նահանգ–ի հվ–արմ. մասում՝ 3200 *մ* բարձր–յան վրա: Հիմնադրվել է 1989–ին:

ՄԱՈՒՆԹ ՊԱԼՈՄԱՐԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ (անգլ.՝ Mount Palomar Observatory) (ԱՄՆ), Կալիֆոռնիայի նահանգ–ի Փասադենա ք–ից 220 *կմ* հվ՝ Մաունթ Պալոմար լ–ան լանջին՝ 1700 *մ* բարձր–յան վրա: Հիմնադրվել է 1978–ին: Հետազոտվում են արտագալակտիկ. օբյեկտները, աստղերը և միգամածությունները:

ՄԱՈՒՆԹ ՍԹՐՈՄԼՈՅԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ (անգլ.՝ Mount Stromlo Observatory), Ավստրալիայի ազգ. համալսարանին պատկանող և նրա Հեռանկար. հետազոտությունների ինստ–ի աստղադիտարանը՝ Կամբեռա ք–ից 11 *կմ* հեռու՝ Մաունթ Սթրոմլո լ–ան լանջին՝ 768 *մ* բարձր–յան վրա: Հիմնադրվել է 1925–ին: Զբաղվում են աստղերի և թույլ օբյեկտների լուսաչափությամբ, հետազոտում հեռավոր աստղերի մոլորակները:

ՄԱՈՒՆԹ ՎԻԼՍՈՆԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ (անգլ.՝ Mount Wilson Observatory) (ԱՄՆ), Կալիֆոռնիայի նահանգ–ի Փասադենա ք–ից 16 *կմ* հեռու՝ Մաունթ Վիլսոն լ–ան լանջին՝ 1750 *մ* բարձր–յան վրա: Հիմնադրվել է 1904–ին: Հետազոտում են Արեգակը, աստղերն ու արտագալակտիկ. օբյեկտները:

ՄԱՈՒՆԹԻՆԲԱՅՔ (անգլ.՝ mounthain bike – լեռն. հեծանիվ), **լեռնահեծանվասպորտ**, հեծանվասպորտի տեսակ, որտեղ օգտագործում են արտահանուղային (կտրտված տեղանք, վայրէջքներ, պլատոմի տեսակներ ևն) ընթացքի համար նախատեսված հատուկ հեծանիվներ: Առաջացել է 1970–ական թթ–ին Տամիլպասի (Կալիֆոռնիա) լ–ներում: 1987–ից անցկացվում է աշխարհի առաջնություն, 1989–ից՝ աշխարհի գավաթի խաղարկություն, 1996–ից ընդգրկվել է օլիմպ. խաղերի ծրագրում:

ՄԱՈՒՐՍՏԱԴ (Maurstad) Ալֆրեդ (1896–1967), նորվեգացի դերասան: 1949–50–ին ղեկավարել է Տրոնհայմի թատրոնը (Լինդ, Պեր Գյունտ՝ Հ. Իբսենի «Սիրո կատակերգություն», «Պեր Գյունտ», Մարկոս Անտոնիոս՝ Վ. Շեքսպիրի «Հուլիոս Կեսար», Էրազմուս՝ Լ. Հոլբերգի «Էրազմուս Մոնտանուս»):

ՄԱՔ (Makk) Կարոլ (ծ. 1925), հունգար կինոռեժ.: Նկարահանել է «Լիլիոմֆի»

(1954), «Տուն՝ ժայռերի տակ» (1958), «Սեր» (1971), «Նայելով իրար» (1982, ըստ Է. Գալգոցիի «Օրենքի սահմաններում» վիպակի), «Այնպիսին, ինչպիսին դու կաս» (2010) և այլ ֆիլմեր: Կանոնի միջազգ. կփ մրց-ներ (1971, 1982):

ՄԱՔԵՆՅԱՅ ՎԱՆՔ, Մաքենոցաց վանք, ճարտ. համալիր ՀՀ Գեղարքունիքի մարզի Մաքենիս գ-ի մոտակայքում: Հայտնի է VII դ–ից: Պարսպից ներս կառույցների հիմն. խմբի կենտրոնում իշխան Գրիգոր Սուփանի կառուցած եռախորան գլխ. եկեղեցին է (IX դ–ի վերջ), որին հվ–արմ–ից կից է ավելի վաղ կառուցված միանավ թաղածածկ եկեղեցին: Պարսպից դուրս՝ դեպի հվ–արլ., միմյանց կից 2 միանավ թաղածածկ եկեղեցիներն են (IX–X դդ.):

ՄԱՔԻԱՎԵԼԻ (Machiavelli) Նիկոլո (1469–1527), իտալացի քաղաքագետ, պատմաբան, գրող: Հեղինակ է «Ֆլորենցիայի պատմություն» (1520–25, հրտ.՝ 1532) աշխ-յան, «Մանդրագորա» (1518, բեմ. և հրտ.՝ 1524) կատակերգության և այլ երկերի: Իտալիայի թշվառության գլխ. պատճառ է համարել նրա քաղ. մասնատվածությունը, որը կարող է հաղթահարել միայն պետ. ուժեղ իշխանությունը: Պետության ամրապնդման համար ընդունելի է համարել բոլոր միջոցները: Այստեղից էլ՝ «մաքիավելականություն» եզրույթը, որ նշանակում է բարոյականության նորմերն արհամարհող քաղ-յուն:

ՄԱՔԻՆԹԱՅՐ (MacIntyre) Ալասդեր Չալմերզ (ծ. 1929), բրիտանացի փիլ.: Արդի մշակութ. ճգնաժամի պատճառը համարել է բարոյական անկումը, որի ակունքներում Լուսավորականության շրջանում բարոյականության բանական մեկնաբանման գաղափարներն են:

ՄԱՔՄԻԼԱՆ (Macmillan) Էդվին Մաթիսոն (1907–1991), ամերիկացի ֆիզիկոս, Մանհեթենի նախագծի մասնակից, ***սինքրոտրոնի*** ստեղծողը: Աշխ-ները վերաբերում են միջուկ. ֆիզիկային, արագացուցչ. տեխնիկային: Ամերիկացի ֆիզքիմիկոս Ֆ. Էյբլսոնի հետ սինթեզել է (1940) նեպտունիումը, Գ. ***Միքորգի*** հետ՝ պլուտոնիումը (1941): Վ. Ի. ***Վեքսլերից*** անկախ առաջարկել է (1945) ինքնաֆազավորման սկզբունքը: Նորելյան (1951, Գ. Սիբորգի հետ), «Խաղաղ ատոմ» (1963) մրց-ներ:

ՄԱՔՍ Սաքս, Սաքսոնիայի արքայազն (Max von Sachsen, 1870–1951), շվեյցարացի արևելագետ, աստվածաբան, հաս. գործիչ: Տիրապետել է հայ-ին, առնչվել է Մխիթարյանների հետ, այցելել Հայաստան (1907): Գերմ. է թարգմանել ***Ներսես Լամբրոնացու*** գործերից, լույս ընծայել հոդվածներ Հայ եկեղեցու պատմության վերաբերյալ: Շվեյցարիայի Ֆրիբուրի համալսարանում (որտեղ 1921–ից դասավանդել է հայոց ու Հայ եկեղեցու պատմություն) 1988–ին Մ–ի հիշատակին տեղադրվել է խաչքար-հուշատախտակ՝ հայ. և գերմ. մակագրությամբ:

ՄԱՔՍ ԲԱԴԵՆԱՑԻ (Max von Baden), (1867–1929), գերմանացի պետ. գործիչ, արքայազն: 1918–ին՝ կայսեր. կանցլեր և Պրուսիայի նախարար-նախագահ: Հայտարարել է ***Վիլհելմ II*** կայսեր հրաժարականը (1918–ի նոյեմբ. 28) գահից:

ՄԱՔՍ ՊԼԱՆԿԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, գիտության աջակցության խոշորագույն ԳՀ կազմ-յուն Գերմանիայում: Կայզեր Վիլհելմի ընկ-յան (1911–1945, Գյոթինգեն) ժառանգորդը (1948–ից): Գլխ. ներկայացուցչությունը՝ Բեռլինում, կառավարման մասնաճյուղը՝ Մյունխենում: Ընկ-յան կազմում կան ավելի քան 17 հզ. մշտական անդամ, 83 գիտ. կազմ-յուն (2015): Իրականացնում է բնական և տեխ. գիտությունների գծով հիմնարար և կիրառական հետազոտություններ:

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, 2 կամ մի քանի պետությունների համաձայնությունը՝ իրենց միջև մաքս. սահմանների վերացման և միասն. մաքս. սակագների կիրառմամբ տարածքի ձևավորման վերաբերյալ: Մ. մ-յան մեջ ընդգրկված յուրաքանչյուր պետության ապրանքները մյուս անդամների տարածք արտահանվում են առանց տուրքերի: 2015–ին Հայաստանը Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի հետ դառնալով ԵՏՄ լիիրավ անդամ՝ դարձել է նաև ԵՏՄ Մ. մ. անդամ:

ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, օրենսդր. ակտ, որը սահմանում է այն կարգ ու կանոնները, որոնց համապատասխան՝ անձինք իրացնում են մաքս. սահմանով ապրանքների ու տրանսպորտ. միջոցների տեղափոխման իրավունքը: ՀՀ-ում ընդունվել է 2000–ին:

ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅՈՒՆ, պետ. սահմանով ապրանքների, արժույթի, արժեքների և այլ առարկաների անօրինական տեղափոխումը: Մ-յան համար պատասխանատվություն (վարչ. կամ քր.) է սահմանված պետությունների մեծ մասում:

ՄԱՔՍԱՊԵՏՅԱՆ Համլետ Վարդանի (1920–1991), ճարտարագետ-մեխանիկոս: Տեխ. գիտ. դ-ր (1966), պրոֆ. (1966), գնդ. (1960): ՀՀ վաստ. ճարտարագետ (1980): Աշխ-ները վերաբերում են ավտոմոբիլների և տրակտորների դինամիկայի, հուսալիության և շահագործման անվտանգության հարցերին:

ՄԱՔՍԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, արքունի գործակալություն Կիլիկյան Հայաստանում: Գործակալը կոչվել է պրոքսիմոս (լատ.՝ proximus – այստեղ՝ տեսուչ, վերահսկող), ղեկավարել է պետ. եկամուտների, մաքսերի ու տուրքերի գանձումը: Ներքին և արտաքին առևտր. հարաբերությունները:

ՄԱՔՍԱՏՈՒՆ, պետ. հիմնարկ. վերահսկում է սահմանով բեռների փոխադրումը, փոխադրվող բեռներից գանձում է տուրքեր և այլ վճարներ: Մ-երը սովորաբար տեղակայվում են ծով. ու գետ. նվինգստ-ներում, միջազգ. օդանավակայաններում, սահմանակետերում ու երկաթ. կայարաններում, երկրի խոշոր կենտրոններում:

ՄԱՔՍԱՏՈՒՐՔ, պետ. դրամ. տուրքեր, որ գանձվում են տվյալ երկիր ներմուծվող ապրանքներից, ունեցվածքից և այլ արժեքներից: Առաջացել են որպես վաճառականներին մատուցվող ծառայությունների վարձ՝ նվինգստ. շին-ներից, պահեստներից, ինչպես նաև կշեռքներից օգտվելու համար: ՀՀ-ում Մ-երի տեսակները, գանձման կարգն ու դրույքաչափերը սահմանված են «Մաքսատուրքերի մասին» ՀՀ օրենքով (1998):

ՄԱՔՍԻԼՆԵՐ (լատ.՝ maxilla – ծնոտ), բազմոտանիների և միջատների ծնոտների երկրորդ կամ ստորին զույգը, խեցգետնակերպների ծնոտների երկրորդ և երրորդ զույգը: Կրծող բերան. ապարատով կենդանիները Մ-ով ծակծկոտում են ճարակը, պատառոտում կամ տրորում կերը, ծծող ապարատ ունեցողների հետ գոյացնում կնճիթիկ:

ՄԱՔՍԻՄ (Maxsim) Հայրեմ (1840–1916), ամերիկացի կոնստրուկտոր և արդյունաբերող: 1880–ական թթ–ին ստեղծել է ինքնաձիգ հրացան, թնդանոթ և «Մաքսիմ» հաստոց. զնդացիրը (1883): Գերմանիայում հիմնել է թնդանոթների գործարան (1888): 1941–ին արդիականացված «Մաքսիմ»–ը խորհրդ. բանակի սպառազինության մեջ էր մինչև ԵՀՊ–ի վերջը:

ՄԱՔՍԻՄ ԳՐԵԿ (աշխարհիկ անունը՝ Միխայիլ Տրիվոլիս, մոտ 1470–1555/56), գրող, աստվածաբան, թարգմանիչ, բանասեր: Քաղ. իդեալն աշխարհիկ և հոգևոր իշխանությունների ներդաշնակությունն էր: Հեղինակ է բարոյախրատ., բանավիճ., փիլ., աստվածաբան. երկերի («Հոգևոր և բարոյական բառեր», հրտ.՝ 2006, «Ճանապարհ Տրոյանովա», հրտ.՝ 2007, ևն): Կատարել է թարգմ-յուններ (այդ թվում՝ Սուրբ Գրքի, եկեղեց. հայրերի երկերի): ՌՈՒԽ-ն Մ. Գ–ին սրբադասել է (1988):

ՄԱՔՍԻՄԻԼԻԱՆ I (Maximilian, 1459–1519), Ավստրիայի էրցհերցոգ, Հռոմ. սրբազան կայսրության կայսր՝ 1493–ից: ***Հաբսբուրգների*** հարստությունից: Սկսել է Հաբսբուրգների ավստր. տիրույթների իրական միավորումը, նրանց կենտրոնացված կառավարումը: Մարիա Բուրգոնդացու հետ ամուսնությամբ (1477) ձեռք է բերել Նիդեռլանդներն ու Ֆրանշ Կոնտեն:

ՄԱՔՍԻՄԻԼԻԱՆ II (1527–1576), Ավստրիայի էրցհերցոգ, Հռոմ. սրբազան կայսրության կայսր՝ 1564–ից: Հաբսբուրգների տոհմի անդամների միջև հողերի բաժանումից հետո ստացել է Վերին ու Ստորին Ավստրիան, Չեխիայի ու Հունգարիայի թագը: Նրա օրոք հաբսբուրգյան տիրույթներում լայնորեն տարածվել է բողոքականությունը:

ՄԱՔՍԻՄՈՎ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (1923–1990), հրթիռ. տեխնիկայի բնագավառի ռուս. գիտնական: Գեն–գնդ. (1981): Սոց. աշխ. հերոս (1984): Աշխ-ները վրաբերում են հրթիռատիեզ. տեխնիկայի մշակմանը, արտադր-յան կազմակերպմանը, յուրացմանը և շահագործմանը:

ԽՍՀՄ Պետ. (1968), Լենինյան (1978) մրց-ներ:

ՄԱՔՍԻՄՈՎ Յուրի Պավլովիչ (1924–2002), խորհրդ. բանակի գեն.: ԽՄ հերոս (1982): Մասնակցել է ՀՄՊ-ին: 1979–ից Թուրքեստանյան ՋՕ հրամ., 1985–ից՝ ռազմավար. նշանակության հրթիռ. զորքերի գլխ. հրամ., ԽՍՀՄ պաշտպ-յան նախարարի տեղակալ: 1992–93–ին՝ ԱՊՀ ռազմավար. ուժերի ՀՕՊ-ի հրամ.:

ՄԱՔՍԻՄՈՎ Նիկոլայ Ալեքսանդրովիչ (1880–1952), ռուս. բուսաբան, բույսերի էկոլոգ. ֆիզիոլոգիայի հիմնադիրներից: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1946): Աշխ-ները վերաբերում են բույսերի երաշտա– և ցրտադիմացկունության ֆիզիոլոգ. հիմունքներին:

Լենինյան մրց. (1930):

ՄԱՔՍԻՄՈՎ Սերգեյ Վասիլևիչ (1831–1901), ռուս գրող, ազգագրագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. ակադ. (1900): Հեղինակ է «Անտառի խուլ թավուտը» (հ. 1–2, 1871), «Սիբիր և տաժանավայր» (մաս 1–3, 1871), «Աստանդական Ռուսաստան հանուն Քրիստոսի» (1877) երկերի, «Թևավոր խոսքեր» (1890) ժող–ի:

ՄԱՔՍԻՄՈՎ Վլադիմիր Եմելյանովիչ (1930–1995), ռուս գրող, հրապարակախոս: 1974–ից՝ տարագիր (Փարիզ): 1974–92–ին՝ «Կոնտինենտ» (ռուս.) ամսագրի գլխ. խմբ.: Հեղինակ է «Արարման յոթ օրը» (1971),

«Կարանտին» (1973), «Տապան անկոչների համար» (1979), «Նայել անդունդի մեջ» (1986, Ա. Վ. *Կոլչակի* մասին), «Թափառել մինչև մահ» (1994) վեպերի, «Ինչպես հովտամերձ այգում» (1993) վիպակի, «Հրաժեշտ ոչ մի տեղից» (գիրք 1, 2, 1974, 1982) ինքնակենսագր. երկի, «Ինքնաոչնչացում» (1995) հոդվածների ժող–ի, նաև պիեսների:


ՄԱՔՍԻՄՈՎԱ Եկատերինա Սերգեևնա (1939–2009), ռուս. բալետի արտիստուհի: ՌԽՖՍՀ (1969), ԽՍՀՄ (1973) ժող. արտիստ: Վ. Վ. *Վասիլևի* կինը: 1958–88–ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մենապարուհի (Ֆրիգիա՝ Ա. Խաչատրյանի «Սպարտակ», Կիտրի՝ Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ», Ժիզել՝ Ա. Ադանի «Ժիզել», Ավրորա՝ Պ. Ի. Չայկովսկու «Քնած գեղեցկուհին», ևն), 1998–ից՝ մանկավարժ–փորձավար: Նկարահանվել է ֆիլմ–բալետներում («Գալաթեա», «Հին տանգո» ևն), նաև «Ֆուետե» գեղ. ֆիլմում:

Երիտասարդների և ուսանողների համաշխ. VII միջազգ. փառատոնի 1–ին մրց. և ոսկե մեդալ (1959, Վիեննա), ԽՍՀՄ (1981), ՌԽՖՍՀ (1984, 1991) Պետ., ՅՈՒՆԵՍԿՕ–ի և այլ մրց–ներ:

ՄԱՔՍԻՄՈՎԻՉ Դեսանկա (1898–1993), սերբ կին գրող: Սերբիայի գիտ–յունների և արվ–ների ակադ–ի անդամ (1959): Հեղինակ է «Հողի հոտը» (1955), «Պահանջում եմ ներում» (1964), «Պերունի սերունդների տարեգրությունը» (1976) փիլ., բարոյախոս. «Ասք պատերազմների մասին» (1978) բանաստեղծությունների ժող–ների, նաև վեպերի, պատմվածքների, մանկ. գրքերի: Հայ. հրատարակվել են «Երազների գերին» (1983), «Աշխարհը նույնն է ամենուր» (1998) բանաստեղծությունների ժող–ները, «Մանուկները հասունանում են» (1967) վեպը:

ՄԱՔՍԻՄՈՎԻՉ Միխայիլ Ալեքսանդրովիչ (1804–1873), ուկրաինացի բանասեր, բանահավաք, պատմաբան, բանաստեղծ, բուսաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1871): Կիևի համալսարանի 1–ին ռեկտորը (1834–41): Հեղինակ է Ուկրաինայի ինագիտ–յանը, պատմաշխարհագրությանը, XVI–XVIII դդ–ի պատմությանը վերաբերող աշխ–ների: Հրատարակել է ալմանախներ («Լուսաստղը», «Կիևցին» ևն), ուկր. ժող. երգերի 3 ժող., նաև քննադատ. հոդվածներ:

ՄԱՔՍԻՄՈՒՄ ԵՎ ՄԻՆԻՄՈՒՄ (լատ.՝ maximum և minimum – բառացի՝ մեծագույն և փոքրագույն) (մաթ.), ֆունկցիայի մեծագույն և փոքրագույն արժեքները՝ նրա բավականաչափ մոտ կետերում ունեցած արժեքների նկատմամբ (տեղային Մ. և մ.): Նկարում $y = f(x)$ ֆունկցիան x_1 և x_3 կետերում ունի տեղային մաքսիմումներ, իսկ x_2 կետում՝ տեղային մինիմում: Մ. և մ. կետերն անվանում են էքստրեմումներ:



ՄԱՔՍԻՄՈՒՍ ԽՈՍՏՈՎԱՆԱՀԱՅՐ (մոտ 580–662), բյուզանդացի ուղղափառ աստվածաբան, սուրբ: Միակամների գլխավոր ընդդիմախոսը: Հեղինակ է բարոյական–ասկետ., մեկնող. (էկզեգետիկ.) ստեղծագործությունների, մեկնել է «Արեոպագիտիկաները», մեծ ազդեցություն է թողել Հովհան Սկոտ Էրիուգենայի և միջնադար. խորհրդապաշտության վրա:

ՄԱՔՍՎԵԼ (Maxwell) Ջեյմս Քլերկ (Clerk, 1831–1879), անգլիացի ֆիզիկոս, մաթեմատիկոս, դաս. *էլեկտրադինամիկայի* ստեղծողը, *վիճակագրական ֆիզիկայի* հիմնադիրներից: Լոնդոնի թագավոր. ընկ–յան անդամ (1860), Կավենդիշի լաբորատորիայի հիմնադիր–տնօրենը (1871): Աշխ–ները վերաբերում են գունավոր տեսողությանը և գունաչափությանը (Մ–ի սկավառակ), օպտիկային (Մ–ի էֆեկտ), առաձգականության տեսությանը (Մ–ի թեորեմ, *Մաքսվել–Կրեմոնայի դիագրամ*) ևն: Ստեղծել է էլեկտրամագնիս. դաշտի տեսությունը (*Մաքսվելի հավասարումներ*), ներմուծել հոսանքի շեղում հասկացությունը, կանխատեսել էլեկտրամագնիս. ալիքների գոյությունը, առաջարկել լույսի էլեկտրամագնիս. բնույթ ունենալու գաղափարը և ցույց տվել, որ էլեկտրամագնիս. ցանկացած ալիքի արագությունը վակուումում հավասար է *լույսի արագությանը*: Հետազոտել է մածուցիկությունը, գազերի դիֆուզիան և ջերմահաղորդականությունը, ապացուցել, որ Սատուռնի օղակները կազմված են առանձին մարմիններից: Նրա անունով է կոչվել մագնիս. հոսքի միավորը ՍԳՎ (CGS) համակարգում՝ 1 *մքս* = 10^{-8} *Վեբեր* (*Վբ*):

ՄԱՔՍՎԵԼԻ ԲԱՇԽՈՒՄ, թերմոդինամիկ. հավասարակշռության վիճակում գտնվող համակարգի մոլ–ների բաշխումն ըստ նրանց շարժման արագությունների (պայմանով, որ մոլ–ների համընթաց շարժումը նկարագրվում է դաս. մեխանիկայի օրենքներով): Սահմանել է (1859) Ջ. *Մաքսվելը*:

ՄԱՔՍՎԵԼԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ, դաս. մակրոսկոպիկ *էլեկտրադինամիկայի* հիմնարար հավասարումներ, որոնք նկարագրում են կամայական միջավայրում և վակուումում էլեկտրամագնիս. երևույթները: Ձևակերպել է Ջ. *Մաքսվելը* 1860–ական թթ–ին՝ ընդհանրացնելով էլ. ու մագնիս. երևույթների մի շարք փորձն. օրինաչափություններ: Մ. հ–ի ժամանակից տեսքը տվել են Հ. *Հերցը* և Օ. *Հևիսայդը*: Մ. հ. 4–ն են և հնարավորություն են տալիս որոշելու էլեկտրամագնիս. դաշտի հետ կապված հիմն. մեծությունները տարածության յուրաքանչյուր կետում և ժամանակի ցանկացած պահի, եթե հայտնի են դաշտի աղբյուրները, հոսանքի և լիցքի խտությունները:

ՄԱՔՍՎԵԼ–ԿՐԵՄՈՆԱՅԻ ԴԻԱԳՐԱՄ (շին. մեխանիկա), դիագրամ, որի միջոցով հարթ ֆերմաների ձողերում գրաֆիկորեն որոշում են ճիգերը: Առաջարկել են Ջ. *Մաքսվելը* և Լ. *Կրեմոնան*:

ՄԱՔՍՈՒԴՅԱՆ Մ'եսրոպ (1876–1918), բանասեր, թարգմանիչ, լեզվաբան, վրդ. (1902–ին): Հեղինակ է «Ակնա բարբառը» (ֆրանս., 1912), «Հաւաքարան անուանց կաթուղիկոսաց (Աղթամարայ)» (1916) աշխ–ների, բանասիր. հոդվածների: Թարգմ–յուններ է արել գերմ–ից, պարսկից, ֆրանս–ից:

ՄԱՔՍՈՒՏՅԱՆ Մաքս (1881–1976), ֆրանս. թատրոնի և կինոյի դերասան: Խաղացել է Փարիզի «Օդեոն» թատրոնում, ապա՝ Ս. Բեռնարի թատերախմբում. հանդես է եկել գլխ. դերերով: Նկարահանվել է կինոյում՝ «Էլիզաբեթ, Անգլիայի թագուհին» (Ս. Բեռնարի մասնակցությամբ, 1913), «Նապոլեոն» (1927), «Ադրիեն Լեկուվրյոր» (1938), «Հիշողությունները ենթակա չեն վաճառքի» (1948) և այլ ֆիլմերում:

ՄԱՔՈՄՈՒՏՈՎ Դմիտրի Դմիտրիևիչ (1896–1964), աստղագիտ. օպտիկայի բնագավառի ռուս գիտնական: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1946): Աշխ–ները վերաբերում են աստղագիտ. օպտիկային ու սարքերի պատրաստմանը: Հայտնաբերել է օպտիկ. սարքերի մենիսկային համակարգերը (Մ–ի աստղադիտակ): ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1946):

ՄԱՔՐԱՎԱՆՔ, XIII դ–ի ճարտ. համալիր ՀՀ Հրազդան ք–ի համանուն թաղամաս–գյուղում: Գլխ.՝ Սբ Աստվածածին եկեղեցին 1 զույգ որմնամույթերով, արլ. կողմում երկհարկ խորանավոր ավանդատներով գմբեթավոր դահլիճ է: Հվ–ից կից է 1 զույգ զանգվածեղ որմնամույթերով միանավ եկեղեցին, արմ–ից՝ գավիթը (պահպանվել են պատերի հիմքերը): Նորոգվել է 1980–ական թթ–ին:

ՄԱՖԻԱ, (իտալ.՝ mafia), գաղտնի հանցագործ խմբավորում, որը գործում է նենգաշորթման (շանտաժ), բռնության, սպանության և այլ հանցավոր մեթոդներով: Առաջացել է Իտալիայի Սիցիլիա կղզում՝ սկզբնապես որպես բնակչության ինքնապաշտպ–յան կազմ–յուն: XX դ–ում Մ. Իտալիայում, հետագայում ուրիշ երկրներում (օր.՝ ԱՄՆ–ում՝ «Կոզա Նոստրան») մենաշնորհել է հանցավոր բիզնեսը (առաջին հերթին՝ թմրանյութերի վաճառքից, խաղատների ու մարմնավաճառների գործունեությունից ստացվող անօրինական եկամուտները), ներթափանցել է նաև քաղ. ոլորտ: Երբեմն «Մ.» տերմինն օգտագործվում է կազմակերպված հանցավորության տարբեր ձևերի բնորոշման համար:

ՄԵԳԱ... (հուն.՝ megas – մեծ), 1. բարդ բառերի մաս. ցույց է տալիս որևէ բանի մեծ, հսկայական չափերը (օր.՝ *մեգասպորներ*, *մեգանտրոպ*): 2. Ելակետ. միավորից 10^6 անգամ մեծ միավոր կազմելու նախածանց (կրճատ՝ *Մ*, միջազգ. նշանակումը՝ M, 1 *ՄՎտ* = 10^6 *Վտ*):

ՄԵԳԱԼԻԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, դամբարան., մեմորիալ կամ պաշտամունք. հնագույն կառույցներ (մենհիրներ, կրոմլեխներ, դոլմեններ, քարարկղեր)՝ անմշակ կամ կոպտատաշ քարերից: Մ. կ–ի տիպերից են վիշապները (Արագածի և Գեղամա լ–ների շրջանում): Նոր քարի դարաշրջանի Մ. կ. պահպանվել են նաև Գեղարքունիքի, Սյունիքի մարզերում (Սիսիանի Երիվարաց դաշտ բնակատեղին ևն):

ՄԵԳԱԼՈՊՈԼԻՍ, քաղաքների վիթխարի կուտակում: Բնորոշ գծերը՝ բնակչության գերկուտակումը սահմանափակ տարածության վրա, կառուցապատման գծային բնույթը (գլխավորապես՝ տրանսպորտ. մայրուղիների երկայնքով), ընդհ. բազմակենտրոն կառուցվածքը, մարդու գործունեության հետևանքով բնության հավասարակշռության խախտումը ևն: Տերմինն առաջացել է Հին Հունաստանի Արկադիա նահանգի ավելի քան 35 բնակավայրի միաձուլումից գոյացած Մ. քաղաքի անունից: Խոշոր Մ–ներ կան ԱՄՆ–ում (Բոսվաշ, Հարավկալիֆոռնիական, Մեծ լճերի ևն), Ճապոնիայում (Տոկայդո),

Չինաստանում (Յանցզի գետի դելտայի, Չժուցյան գետի դելտայի, Բոհայ ևն), Հնդկաստանում (Հվ. Հնդկաստան, Սահարաշտրա) ևն:

ՄԵԳԱՆԵՏՐՈՊ (< *մեգա*... և հուն.՝ antropos – մարդ), բրածո մարդու ձև, որի ստորին ծնոտի հատվածները հայտնաբերել է Գ. Ռ. ֆոն *Քյոնիգսվալդը* 1941-ին Սանգիրանում (Ճավա կղզի): Քյոնիգսվալդը նրան դասել է Meganthropus palaeojavanicus սեռին: Ժամանակակից գիտնականների մեծ մասը համարում է, որ Մ. մոտ է այսպես կոչված մոջոկերտյան պիտեկանտրոպին (Homo erectus mojokertiensis), ուրիշներն առանձնացնում են որպես հատուկ տեսակ՝ Homo palaeojavanicus:

ՄԵԳԱՍՊՈՐՆԵՐ, *մակրոսպորներ*, բարձրակարգ տարասպոր բույսերի առավել խոշոր սպորներ, որոնցից զարգանում են իգական նախածիլերը: Ջր. պտերների, սելագինելայի Մ. իգական նախածիլն է, մերկասերմերինը՝ առաջնային էնդոսպերմը, ծաղկավոր բույսերինը՝ սաղմնային պարկը:

ՄԵԳԱՐՅԱՆ ԴՊՐՈՑ, հինհուն. փիլ. ուղղություն (մ. թ. ա. IV դ.), որը էկլեկտիկորեն համադրել է Սոկրատեսի, էլեաթների դպրոցի և սոփեստների գաղափարները: Հիմնադիրն է Էվկլիդես Մեգարացին (մ. թ. ա. մոտ 450–380): Նշանավոր ներկայացուցիչներից են Սթիլպոն Մեգարացին, Էվբուլիդ Միլեթացին, Դիոդորոս Կրոնը: Վերջին երկուսին են վերագրվում բազմաթիվ ավանդ. սոփեստություններ («Ստախոսը», «Կույտ» ևն):

ՄԵԳԵՐԱ, վրեժխնդրության 3 աստվածներից (էրինիեիներից) մեկը հուն. դիցյան մեջ, մարմնավորել է զայրույթ և վրեժխնդրություն: Պատկերվել է սարսափելի կնոջ կերպարանքով: Փխր. իմաստով՝ չար, կռվարար կին:

ՄԵԳՐԵԼԵՐԵՆ, *մեգրելների* լեզուն: Պատկանում է իբերա-կովկաս. լեզվաընտանիքի քարթվել. ճյուղին: Գիր չունի:

ՄԵԳՐԵԼՆԵՐ (ինքնանվանումը՝ մարգալներ), վրացիների ազգագր. խումբ՝ Մեգրելիա պատմ. մարզում (400 հզ., 2002): Շուրջ 300–400 հզ. Մ. ապրում են Վրաստանի մյուս շրջաններում, 44 հզ.՝ Աբխազիայում, նաև ՌԴ-ում (2,6 հզ.): Լեզուն՝ մեգրել.: Հավատացյալները հիմնականում ուղղափառ քրիստոնյա են:

ՄԵԳԱԼԱՊՈՐԾՈՒԹՅՈՒՆ, մեդալային արվեստ, դրամների և մեդալների պատրաստման արվ., գլիպտիկային մոտ մանր պլաստիկայի հատուկ ոլորտ: Պատրաստում են մետաղներից (ոսկի, արծաթ, պղինձ, նաև կավ, հախճապակի ևն) և այլ նյութերից, որոնց վրա հնարավոր է փորագրել հորինվածքով մանր, բայց մնայուն պատկերներ: Մ. սկզբնավորվել է Լիդիայում և Հին Հունաստանում (մ. թ. ա. VIII–VII դդ.-ի սահմանագիծ) դրամի երևան գալու հետ: Հինհայկ. դրամներ թողարկվել են մ. թ. ա. III–II դդ.-ում Ծոփքի թագավորություններում: Հայկ. առաջին մեդալներն ստեղծվել են XVII դ.-ի 2-րդ կեսին Վենետիկում և Ամստերդամում:

ՄԵԴԱԼԻՈՆ (ֆրանս.՝ médaillon), 1. կերպար. կամ զարդապատկեր. հորինվածք (ծեփածո կամ փորագիր ռելիեֆ, զարդանախշ խճանկար) շրջանաձև կամ ձվաձև շրջանակի մեջ: Գործածվում է շենքերի, կահույքի ևնի հարդարման համար: 2. Ոսկերչ. զարդ (շրջանաձև կամ ձվաձև տուփիկի տեսքով, հաճախ՝ շղթայով)՝ մանրապատկերներ կամ մասունք պահելու համար:

ՄԵԴԱՎԱՐ (Medavar) Պիտեր Բրայան (1915–1987), անգլիացի կենսաբան: Լոնդոնի թագավոր. ընկ-յան (1949), Նյու Յորքի (1957), Բրիտ. (1981) ակադ-ների պատվ. անդամ: Ուսումնասիրել է օրգանիզմի հակազդեցությունը փոխպատվաստում. հակածինների հանդեպ, բացահայտել է ձեռքբերովի իմունաճանդուրժողականությունը:

ՄԵԴԵԱ, կախարդուհի հուն. դից-յան մեջ. օգնել է արգոնավորդների առաջնորդ *Յասոնին*՝ ձեռք բերելու ոսկե գեղմը: Երբ վերջինս որոշել է ամուսնանալ Կորնթոսի արքայադստեր հետ, Մ. կործանել է նրան, սպանել իր և Յասոնի 2 զավակներին և անհետացել թևավոր կառքով:

ՄԵԴԵՈ (ղազախ.՝ Մեդեու), ձմեռ. մարզ. համալիր Ղազախստանում՝ Անդրալպ. Ալաթաու լ-ներում՝ Ալմաթիի մոտ: Գործում է 1951-ից: Սահադաշտի մակերեսը՝ 10,5 հզ. u^2:

ՄԵԴԻԱՍՏԻՆԻՍ (նոր լատ.՝ mediastinum – միջնորմ), միջնորմի բջջանքի բորբոքում՝ նրա օրգանների ամբողջականության խանգարման հետևանքով (օր.՝ կեռակրափողի թափածակումը) կամ որպես բարդություն՝ կրծքավզի, թոքերի, բերանի խոռոչի, պարանոցի թարախ. հիվանդությունների ժամանակ:

ՄԵԴԻՆԱ, ք. Սաուդյան Արաբիայի հսարմ-ում: Բն.՝ մոտ 1.1 մլն (2010): Հնում կոչվել է Յասրիբ (Յատրիբ), վաղ միջնադարից՝ Մ. (արաբ.՝ քաղաք): 622-ին իսլամի հիմնադիր *Մուհամմեդը Մեքքայից* տեղափոխվել է Մ., ստեղծել մահմեդ. համայնք: VII դ.-ից Մ. մահմեդ. 2-րդ սրբազան քաղաքն է (Մեքքայից հետո): Մ-ում է Մուհամմեդի գերեզմանը: Ունի մեծ մզկիթ (VII դ., VIII դ. և XIX դ.):

ՄԵԴԻՉԻ (Mediçi), լատիշ կոմպոզիտորների ու դիրիժորների ընտանիք: 1. **Յազեպ Մ.** (1877–1947), Լատվ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1945): Հեղինակ է օպերաների («Քրմուհի», 1927, ևն), 3 սիմֆոնիայի (1922–41), «Լատվիական երկիր» (1935) սիմֆ. պոեմի, նաև խմբերգերի, երգերի: 2. **Եկաբ Մ.** (1885–1971), Լատվ. ԽՍՀ ժող. արտիստ (1960): Երգի հանրապետ. տոնի գլխ. դիրիժոր: Հեղինակ է 8 կանտատի, 11 կոնցերտի, 3 լար. կվարտետների ևն: Աշակել է ժող. երգեր: 3. **Յանիս Մ.** (1890–1966), Լատվ. ազգ. օպերայի («Կրակ ու գիշեր» երկերգություն, 1921, «Աստվածներ և մարդիկ», 1922, ևն) հիմնադիրներից: Հեղինակ է նաև 2 բալետի, նվագախմբային գործերի, գործիք. կոնցերտների և այլ գործերի:

ՄԵԴԻՆՍԿԻ (Պոկրովսկի) Գրիգորի Ալեքսանդրովիչ (1899–1984), ռուս գրող: Վեպերում («Տասներորդ «Ա-ն»», 1939) և վիպակներում («Պատիվ», 1959), հրապարակախոս. գործերում («Դժվարին գիրք», 1946) առկա է դաստիարակության խնդիրների սուր դրվածքը: Հեղինակ է նաև «Մարյա» (1946–49) վեպի, «Կյանքի աստիճանները» (1981) ինքնակենսագր. երկի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

ՄԵԴԻՉԻՆԵՐ (Medici), տոհմ Ֆլորենցիայում. կարևոր դեր է խաղացել միջնադար. Իտալիայում: Հիմնադրել է XV դ.-ի խոշորագույն առևտրաբանկ. ընկ-ը: Կառավարել են 1434–1737-ին (ընդմիջումներով՝ 1494–1512, 1527–30): Գլխ. ներկայացուցիչներն են՝ **Կոզիմո Ավագ Մ.** (1389–1464). կառավարել է 1434-ից, **Լորենցո Սքանչելի Մ.** (1449–1492)՝ 1469-ից: Մ.-ի տոհմից է Ֆրանսիայի թագուհի *Եկատերինա Մեդիչին*:

«ՄԵԴԻՑԻՆԱԿԱՆ ՎԵՍՏՆԻԿ ԷՐԵԲՈՒՆԻ» («Медицинский вестник Эребуни» – «Էրեբունի բժշկական հանդես»), գիտաբժշկ. եռամսյա հանդես (1996-ից, Երևան, հոդվածները՝ հայ., ռուս., անգլ.): Հիմնադիր-խմբ.՝ Հարություն Քուշկյան, պատ. քարտուղար՝ Արմեն Չարչյան:

ՄԵԴԻՈՒՄ (լատ.՝ medium – միջին, միջանկյալ, միջնորդավորված), ոգետեսության մեջ միջնորդ՝ «ոգիների» աշխարհի և մարդկանց միջև, որը *տրանսի* վիճակում հաղորդում է հանգուցյալների ուղերձները: Պարահոգեբ-յան մեջ արտասովոր կարողություններով (մեդիումական), օր.՝ գերզգայական ընկալումներով օժտված մարդ:

ՄԵԴՆԻԿՅԱՆ Գրիգոր Հարությունի (1891–1974), դեղաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1935), պրոֆ. (1935): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ: 1965–70-ին՝ Բժիշկների կատարելագործման ինստ-ում դեղաբանության ամբիոնի հիմնադիր-վարիչ: Ուսումնասիրել է հայրեն. բնական և սինթետիկ նյութերի, կենսաբանորեն ակտիվ միացությունների, կենդ. թույների դեղաբան. հատկությունները, Հայաստանի դեղաբույսերը, նրանց գլիկոզիդ. և ալկալոիդ. բաղադրությունը, տարածումը, հանք. ջրերի քիմ. և դեղաբան. հատկությունները: «Արզնի» և «Ջերմուկ» առողջարանների հիմնադիրներից է:

ՄԵԴՎԵԴԵՎ Դմիտրի Անատոլևիչ (ծ. 1965), ռուս. հաս-քաղ. գործիչ, ՌԴ նախագահ՝ 2008–12-ին, վարչապետ՝ 2012-ից: 2005–08-ին՝ վարչապետի 1-ին տեղակալ: 2000 –01 և 2002–08-ին՝ «Գազպրոմ» ԲԲԸ տնօրենների խորհրդի նախագահ, 2003–05-ին՝ ՌԴ նախագահի աշխատակազմի ղեկ.: 2008-ին ստորագրել է Աբխազիայի և Հվ. Օսիայի անկախությունների ճանաչման, 2010-ին ԱՄՆ նախագահ Օբամայի հետ՝ Ռազմավար. հարձակող. սպառազինության կրճատման պայմանագրերը:

ՄԵԴՎԵԴԵՎ Սերգեյ Սերգեևիչ (1891–1970), ռուս ֆիզքիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1958, թղթ. անդամ՝ 1943-ից): ՌԽՖՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1943): Աշխ-ները վերաբերում են օքսիդացման մեխանիզմներին, պոլիմերման տեսությանը: Մ.-ի ուսումնասիրությունները նպաստել են բազմաթիվ պոլիմերների սինթեզի արդ. եղանակների մշակմանը:

ԽՍՀՄ Պետ. (1946), ԽՍՀՄ ԳԱ Ս. Վ. Լեբեդևի անվ. (1971, հետմահու) մրց-ներ:

ՄԵԴՎԵԴԿԻՆ Ալեքսանդր Իվանովիչ (1900–1989), ռուս կինոռեժ.: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1965): ԽՍՀՄ ժող. արտիստ (1979): Նկարահանել է կինոկատակերգություն-հեքիաթներ, որտեղ դրսևորվել է Մ.-ի էքսցենտրիկ մտածողությունը («Ծղանիկ», 1930, «Երջանկություն», 1935, «Հրաշագործուհին», 1937, «Նոր Մոսկվա», 1939), վավերագր. ֆիլմ-պամֆլետներ («Բանականություն՝ ընդդեմ խելահեղության», 1960, «Եֆրեյտորի ստվերը», 1967, «Տագնապալի ժամանակագրություն», 1972, «Խելահեղություն», 1980, ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1974):

ՄԵԴՐԵՍԵ (արաբ.՝ մադրասա, < դարասա – սովորել, յուրացնել), մուսուլման. հոգևոր կրթ. հաստատություն: Առաջին Մ.-ները ստեղծվել են X դ.-ում:

ՄԵԴՈՒԶԱՆԵՐ, ծով. աղեխորշավորների՝ սցիֆոիդների և հիդրոիդների սեռ. սերնդի, սովորաբար՝ ազատ լողացող անհատներ: Առաջանում են բողբոջմամբ՝ նստակյաց անսեռ սերնդի՝ պոլիպի վրա: Կիսաթափանցիկ, դոնդողանման մարմինը հովանոցաձև է կամ զանգաձև՝ մի քանի *մմ*-ից մինչև 2, 3 *մ* տրամագծով՝ շոշափուկներով (խայթաբջիջներով օժտված) երիզված (երկ.՝ մինչև 30 *մ*): Որոշ Մ-ի խայթոցից կարող է այրուցք առաջանալ:

ՄԵԶ, մարդու և կենդանիների երիկամներում մշակվող արտաթորության արգասիք: Բաղկացած է ջրից (96 %) և նրա մեջ պարունակվող աղերից, նյութափոխանակության վերջն. արգասիքներից: Բնականոն վիճակում մարդը միզում է 1,2–1,6 *լ*: Մ-ի քննությունն օգտագործվում է բազմաթիվ հիվանդությունների ախտորոշման ժամանակ:

ՄԵԶԵՆՔԻՄ (< *մեզո*... և հուն.՝ enchyma – լցված, այստեղ՝ հյուսվածք), մարդու և բազմաբջիջ կենդանիների մեծ մասի սաղմն. շարակց. հյուսվածք: Մ-ից զարգանում է բուն շարակց. հյուսվածքը, արյունատար անոթները, հարթ մկանները, արյան ձևավոր տարրերը, ընդերային կմախքը, գունակային բջիջները և մաշկի շարակցահյուսվածք. շերտի մի մասը:

ՄԵԶԻՐԵ, Մեզերե (արաբ.՝ մեզիրա – ցանքատեղ, ցանքադաշտ), ք. Արմ. Հայաստանում՝ Խարբերդ ք-ից 5 *կմ* հվ-արմ., 1878-ից՝ Խարբերդի (այժմ՝ Էլյազըղ) նհնգ-ի վարչ. կենտրոնը: Հիմնադրել են խարբերդցի հայերը 1617-ին: Մ-ում գործել են ***Մեզիրեի ազգային կեդրոնական վարժարանը***, Աղջկանց վարժարանը, Ֆրանս. կոլեժը (հիմն.՝ 1895), Գերմ. քոլեջը (հիմն.՝ 1897) և այլ հաստատություններ: 1914-ին բնակիչների (16 հզ.) կեսը հայեր էին. 1915-ին տեղահանվել են, մեծ մասը զոհվել է:

ՄԵԶԻՐԵԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ, հիմնադրվել է 1892-ին *Մեզիրե* ք-ում՝ տեղի կրթ. միությունների ջանքերով: Սկզբում՝ արական, ապա՝ երկսեռ: Տեսուչներ են եղել Ռուբեն ***Զարդարյանը***, ***Երուխանը*** և ուր.: 1913-ին վարժարանին կից բացվել է ճեմարան՝ 2 տարվա դասընթացով և կոչվել «Հայկական ճեմարան»: Փակվել է 1915-ին, վերաբացվել՝ 1918-ին, գործել՝ մինչև 1923-ը:

ՄԵԶՅՈՒ Ավգուստա Վլադիմիրովնա (1869–1935), ռուս. մատենագետ: Հեղինակ է «Ռուսական բանահյուսությունը XI–ից XIX հարյուրամյակները ներառյալ» (1899–1902), «Գրքագիտության բառարանային ցուցիչ» (1924–34, Ռուսաստանում առաջինն է կանոնակարգել գրքագիտյան բոլոր ճյուղերի տեղեկատուները):

ՄԵԶՈ... (հուն.՝ mesos – միջին, միջանկյալ), բարդ բառերի սկզբնամաս. ցույց է տալիս միջին մեծություն կամ որևէ բանի միջանկյալ դիրք (օր.՝ ***մեզոդերմա***, ***մեզոպաուզա*** ևն):

ՄԵԶՈԱՏՈՄ, ատոմանման համակարգ, որում էլեկտրաստատիկ ձգողության ուժերը դրական միջուկը կապում են բացաս. լիցքավորված մեկ կամ մի քանի ***միուոնների*** (միւոնային ատոմ) կամ ***հադրոնների*** (հադրոնային ատոմ) հետ: Մ. կարող է պարունակել նաև էլեկտրոններ:

ՄԵԶՈԴԵՐՄԱ, մեզոբլաստ, մարդու և բազմաբջիջ կենդանիների (բացի սպունգներից ու աղեխորշավորներից) սաղմն. միջին թերթիկ: Մ-ից ձևավորվում են մկանները, աճառները, ոսկրերը, արյունա- և ավշագոյացման, արտաթորության, սեռ. և այլ օրգաններ: Տես նաև *Էկտոդերմա* և *Էնտոդերմա*:

ՄԵԶՈԶԱՎՐԵՐ (Mesosaurus), անհետացած սողունների կարգ: Երկ.՝ մինչև 1 *մ*: Ապրել են վաղ պերմում՝ Հվ. Աֆրիկայի և Հվ. Ամերիկայի քաղցրահամ ջրամբարներում: Մնվել են ձկներով: Հայտնի է 2 ցեղի 5 տեսակ:

ՄԵԶՈԶՈՎԵՐ, անողնաշարների տիպ: Հայտնի է 30 տեսակ: Ծով. անողնաշարների ներքին մակաբույծներ են, նախկինում համարվել են միջանկյալ խումբ միա- և բազմաբջիջ կենդանիների միջև: Մարմնի երկ. մինչև 1 *սմ*՝ ծածկված թարթիչավոր էպիթելով, ներսը լցված է վերականգնող. բջիջներով:

ՄԵԶՈԶՈՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ, մեզոզոյ (< ***մեզո***... և հուն.՝ zoe – կյանք), ***ֆաներոզոյի*** 2-րդ դարաշրջանը, հաջորդում է պալեոզոյին և նախորդում՝ կայնոզոյին: Տևողությունը մոտ 186 մլն տարի է (մ. թ. առաջ 251-ից մինչև 65 մլն տարի): Առանձնացրել է անգլիացի երկրաբան Ջ. ***Ֆիլիպսը*** 1841-ին: Բաժանվում է տրիասի, յուրայի և կավճի ժամանակաշրջանների: Մ. դ-ում գերակշռել են սողունները (դինոզավրեր, իխտիոզավրեր, պտերոզավրեր ևն), որոնք ունեցել են վիթխարի չափեր, առաջացել են բազմաթիվ միջատներ, թռչուններ և կաթնասուններ: Անողնաշարներից գերակշռել են ամոնիտներն ու բելեմնիտները, որոնք վերացել են դարաշրջանի վերջին: Տեղի է ունեցել ֆլորայի թարմացում, լայնորեն տարածվել են գինկգոազգիները, դարաշրջանի վերջին առաջացել են ծաղկավոր բույսերը:

ՄԵԶՈԶՈՅԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, խաղաղօվկիանոսյան ծալքավորություն, երկրակեղևի առանձին մարզերում և գոտիներում արտահայտված ծալքավոր ձևախախտումներ, որոնք տեղի են ունեցել ***մեզոզոյան դարաշրջանում***՝ հիմնականում Խաղաղ օվկ-ի ծայրամասերում:

ՄԵԶՈԿԱՐՊ (< ***մեզո***... և հուն.՝ karpos – պտուղ), բույսերի պտղապատյանի միջին թերթիկը (օր.՝ ձմերուկի հյութալի պտղամիսը):

ՄԵԶՈՄԵՐԻԱ (< ***մեզո***... և հուն.՝ meros – մաս), մոլ-ի էլեկտրոն. կառուցվածքի տեսություն, ըստ որի՝ մոլ-ում քիմ. կապերի և ատոմների լիցքերի բաշխումն ապատեղայնացված է: Մ. լինում է զուգորդված կրկնակի կապեր և չօգտագործված էլեկտրոն. զույգեր պարունակող մոլ-ներում և արտահայտում է մոլ-ի իրական վիճակը: Այդ մոլ-ների համար քիմ. կառուցվածքի դաս. տեսությունը հնարավոր է համարում 2 կամ ավելի համարժեք կառուցվածքներ: Իրականում մոլ-ն այդ կառուցվածքների ռեզոնանս. հիբրիդն է (տես ***Ռեզոնանսի տեսություն***):

ՄԵԶՈՆԱՅԻՆ ՔԻՄԻԱ, նյութի քիմ. և բյուրեղ. կառուցվածքների, մագնիս. հատկությունների, ատոմների քիմ. ռեակցիայի մոդելավորման ուսումնասիրման եղանակ, հիմնված է ***մյուոնների*** (μ^+, μ^-) և բացաս. լիցքավորված ***մեզոնների*** (π^-, K^-) յուրահատուկ հատկությունների օգտագործման վրա:

ՄԵԶՈՆԵՖՐՈՍ (< ***մեզո***... և հուն.՝ nephros – երիկամ), առաջնային կամ իրանային երիկամ, վոլֆյան մարմին, արտաթորության զույգ օրգան: Ձկների և երկկենցաղների Մ. գործում է ամբողջ կյանքի ընթացքում, մնացած անողնաշարների և մարդու Մ.՝ միայն սաղմն. զարգացման վաղ փուլերում՝ փոխարինվելով երկրորդ. երիկամով (մետանեֆրոս):

ՄԵԶՈՆՆԵՐ (հուն.՝ mezzos – միջին), զրոյի կամ ամբողջ թվի հավասար սպինով անկայուն տարր. մասնիկներ, որոնք չունեն բարիոն. լիցք: Մ. են π–մեզոնները, k–մեզոնները, բազմաթիվ ***ռեզոնանսները***: Հայտնաբերվել են «հմայքով» և «գեղեցկությամբ» Մ. (տես ***Տարրական մասնիկներ***):

ՄԵԶՈՍԱՊՐՈԲՆԵՐ (< ***մեզո***... և հուն.՝ sapros – նեխած, bios – կյանք), օրգանիզմներ, որոնք ապրում են օրգ. նյութերով չափավոր աղտոտված ջրում: Մ. են բազմաթիվ բակտերիաներ, որոշ սնկեր, ջրիմուռներ, նախակենդանիներ, անվակիրներ, փափկամարմիններ, խեցգետնակերպներ, միջատներ և ձկներ: Նպաստում են ջրի կենսբ. մաքրմանը:

ՄԵԶՈՖԻՏՆԵՐ (< ***մեզո***... և հուն.՝ phyton – բույս), բույսեր, որոնք աճում են բավարար խոնավության հողերում: Միջանկյալ խումբ է չորա- և ջրասեր բույսերի միջև: Աճում են հիմնականում բարեխառն գոտու արևադարձ. և մերձարևադարձ. անտառներում:

ՄԵԶՊՈՒՐՅԱՆ Մկրտիչ (1834–1914), մանկավարժ, հաս. գործիչ: Եղել է Կ. Պոլսի Պողոսյան վարժարանի տնօրենը, 1865–96-ին՝ ***Մեզպուրյան վարժարանի*** հիմնադիր-տնօրեն:

ՄԵԶՊՈՒՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ, հիմնադրվել է 1865-ին Կ. Պոլսի Գում Գափու թաղամասում՝ Մկրտիչ ***Մեզպուրյանի*** նախաձեռնությամբ: Սկզբում եղել է երկսեռ նախակրթարան, 1879-ին տեղափոխվել է Սկյուտար, վերածվել աղջիկների երկրորդ. վարժարանի: Փակվել է 1896-ին՝ միջոցների սղության պատճառով: 1900-ին Մ. վ-ի հիման վրա Գատըգյուղում բացվել է Փալագաշյան գիշերօթիկ երկսեռ դպրոցը:

ՄԵԹԱ, Մեհթա (Mehta), Զուբին (ծ. 1936), հնդիկ դիրիժոր: 1961–67-ին՝ Մոնրեալի սիմֆ., 1962–78-ին (միաժամանակ)՝ Լոս Անջելեսի, 1977-ից՝ Իսրայելի սիմֆ., 1978–91-ին՝ Նյու Յորքի ֆիլհարմոնիկ, 1998–2006-ին՝ Բավարիայի օպեր. և այլ նվագախմբերի դիրիժոր: Լավագույն բեմադրություններից է Ջ. Պուչչինիի «Տուրանդոտը» (չին ռեժ. Չժան Իմոյի հետ):

Երիտասարդ դիրիժորների միջազգ. մրցույթի 1-ին մրց. (1958, Լիվերպուլ):

ՄԵԹԱՆ, ճահճագազ, հանքագազ, CH_4, հագեցած ածխաջրածինների պարզագույն ներկայացուցիչը: Անգույն, անհոտ գազ է, $t_{եռ.}$՝ – 164°C: Բնական (77–99 %), նավթին ուղեկցող (31–90 %), հանք. և ճահճ. գազերի հիմն. բաղադրիչն է: Օդում այրվում է անգույն բոցով, օդի հետ առաջացնում պայթուցիկ խառնուրդներ: Օգտագործում են որպես վառելանյութ և շատ արժեքավոր օրգ. նյութերի արտադր-յան հումք:

ՄԵԹԻԼԱԼԿՈՀՈԼ, մեթիլ սպիրտ, մեթանոլ, փայտի սպիրտ, CH_3OH, հագեցած միատոմ սպիրտների պարզագույն ներկայացուցիչը: Թույլ սպիրտ. հոտով, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 64,5°C: Լավ լուծիչ է: Ֆորմալդեհիդի, էսթերների (օր.՝ դիմեթիլտերեֆտալատի), ալկիլհալոգենիդների և այլ նյութերի արտադր-յան հումք է: Ուժեղ թույն է, ազդում է նյարդ. և անոթ. համակարգերի վրա: 5–10 *մլ* Մ. խմելու դեպքում առաջանում է ծանր

թունավորում, կուրություն, իսկ 30 *մլ*-ի դեպքում՝ մահ:

ՄԵԹԻԼԵՆԱՅԻՆ ԿԱՊՈՒՅՏ, **մեթիլենային երկնագույն**, քինոնիմինային (թիազինային) ներկանյութ: Օգտագործում են թուղթը, բամբակը, մետաքսը ներկելու, պոլիգրաֆ. ներկեր պատրաստելու համար, վերլուծ. քիմիայում (որպես ինդիկատոր՝ ռեդօքսաչափության մեջ), բժշկության մեջ (որպես հականեխիչ՝ այրվածքների դեպքում), որոշ թույների (օր.՝ կապտաթթվի) մնասազերծման համար:

ՄԵԹԻԼԹԱՂԱՆԹԱՆՅՈՒԹ, **մեթիլցելյուլոզ**, թաղանթանյութի մեթիլ եթեր՝ $[C_6H_7O_2(OH)_{3-x}(OCH_3)_x]_n$ (x = 1,4 – 2), սպիտակ, ամորֆ փոշի է: Ստացվում է այսպես կոչված հիմնային թաղանթանյութի և մեթիլ քլորիդի փոխազդեցությամբ: Օգտագործում են որպես սոսնձող նյութ, ներկերի և սննդամթերքի թանձրացուցիչ, ասբեստցեմենտի պլաստիկարար, էմուլգարար և փրփրեցուցիչ:

ՄԵԹԻԼՄԵՏԱԿՐԻԼԱՏ, $CH_2=C(CH_3)-COOCH_3$, α–մետակրիլաթթվի մեթիլ էսթերը: Ջրում վատ լուծվող անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 101°C: Մ–ի գոլորշիներն օդի հետ առաջացնում են պայթուցիկ խառնուրդներ: Օգտագործում են հիմնականում օպտիկապես մաքուր պոլիմեր՝ **պոլիմեթիլմետակրիլատ** ստանալու համար (տես նաև ***Ապակի օրգանական***): Թունավոր է, ունի թմրեցնող հատկություն, գոլորշիները գրգռում են լորձաթաղանթը:

ՄԵԹԻՈՆԻՆ, α–ամինա–γ–մեթիլթիոկարագաթթու՝ $CH_3SCH_2CH_2CH(NH_2)COOH$, ծծումբ պարունակող ալիֆատիկ ամինաթթու: Մտնում է սպիտակուցների բաղադրության մեջ: Մեթիլ ($-CH_3$) խմբերի դոնոր է: Անփոխարինելի ամինաթթու է: Սինթետիկ Մ. կիրառվում է կերերի, սննդի հարստացման համար և որպես բժշկ. պատրաստուկ:

ՄԵԹՅՈՒ (Matthew) Առնոլդ (1822–1888), անգլիացի բանաստեղծ, քննադատ: Հեղինակ է «Մոլորված խրախճանասերը» (հրտ.՝ 1849), «Էմպեդոկլեսը Էտնայի վրա» (հրտ.՝ 1852) բանաստեղծությունների, «Նոր պոեմներ» (հրտ.՝ 1867) ժող–ների, «Աշակույթ և անարխիա» (1869), «Գրականություն և դոգմա» (1873) էսսեների, «Քննադատության փորձեր» (գիրք 1, 2, 1865, 1888) ժող–ի:

ՄԵԹՅՈՒՄ (Mathews), անգլիացի դերասանների և թատեր. գործիչների ընտանիք: **Չառլզ Մ.** (1776–1835), տիրապետել նմանակման արվ–ին: **Ջեյմս Մ.** (1803–1878), Չառլզ Մ–ի որդին: Կատակերգ. դերերով հանդես է եկել Լոնդոնի «Քովենտ Գարդեն» և «Լիցեում» թատրոններում: **Լուսիա Էլիզաբեթ Մ.** (1797–1856, հայտնի է նաև որպես Է. Վեստրիս), Ջեյմս Մ–ի կինը: Խաղացել է Լոնդոնի «Դրուրի Լեյն», «Քովենտ Գարդեն» և «Հեյմարկեթ» թատրոններում: Եղել է առաջին անգլիացի կին անտրեպրենյորը և ռեժ–ը: 1831–ին՝ Լոնդոնի «Օլիմպիկ» թատրոնի ղեկ.:

ՄԵԹՈԼ, *պ*–մեթիլամինաֆենոլի սուլֆատ: Անգույն ասեղնաձև բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 250°C (քայքայվելով): Օգտագործվում է որպես լուսանկարչ. հայտածիչ նյութ:

ՄԵԺԵԼԱՅՏԻՍ (Mieželaitis) Էդուարդաս (1919–1997), լիտվացի բանաստեղծ: Լիտվ. ԽՍՀ ժող. բանաստեղծ (1974): Սոց. աշխ. հերոս (1974): ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (1976): Լիտվայի ԳՄ՝ նախագահ (1959–70): Հեղինակ է «Հայրենիքից փչող քամին» (1946, հայ.՝ 1980), «Մարդը» (1961, հայ.՝ 1965), «Արևը սաթի մեջ» (1961) և այլ բանաստեղծությունների ժող–ների, «Եղբայրական պոեմ» (1955) և այլ գործերի: Թարգմանել է հայ գրողների գործերից, գրել նրանց մասին հոդվածներ, նաև «Հայաստան» շարքը: Հայ. հրատարակվել են նաև «Քարե գինի» (1980), «Իմ կրկնակի Արարատը» (1984), «Ճակատագրի թաս» (1998), «Դայնայի օրագիրը» (2002) ժող–ները:

Լ.Ենինյան (1962), Ջ. Ներուի անվ. (1969) մրց–ներ:

ՄԵԺԻՐՈՎ Ալեքսանդր Պետրովիչ (1923–2009), ռուս բանաստեղծ: 1994–ից՝ ԱՄՆ–ում: Հեղինակ է «Վերադարձ» (1955), «Պայտ» (1967), «Ուշ բանաստեղծություններ» (1971), «Արձակ բանաստեղծություններ» (1986), «Ձյունամրրիկ» (1997) և այլ բանաստեղծությունների ժող–ների:


ԽՍՀՄ (1986), ՎԽՍՀ (1987) Պետ. մրց–ներ:

ՄԵԺԼՈՒՄՅԱՆ Արշավիր Արամայիսի (1928–2002), անասնաբույժ: Կենսբ. գիտ. դ–ր (1981), պրոֆ. (1984): Աշխ–ները վերաբերում են գղտ. կենդանիների վարակիչ հիվանդությունների բուժման և կանխարգելման միջոցառումների մշակման հարցերին:

ՄԵԺԼՈՒՄՅԱՆ Ռաֆիկ Արտաշեսի (1914–1969), մեխանիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1954), պրոֆ. (1967): Աշխ–ները վերաբերում են աերոդինամիկայի, թռչող սարքերի կառավարման, պլաստիկության տեսության, թռիչքի անվտանգության հարցերին:

ՄԵԺՈՒՆՑ Բագրատ Խաչատուրի (ծ. 1942), գյուղատնտես: Գղտ. գիտ. դ–ր (2011): 1993–ից՝ ՀՀ ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի ղեկ.: Աշխ–ները վերաբերում են Հայաստանի անասնապահության կերային բազայի, կենսաբազմազանության պահպանման և այլ հարցերի:

ՄԵԼԱՄԻՆ, 1,3,5–եռազին–2,4,6–եռամին՝ $C_3H_6N_6$, անգույն բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 354°C: Ստանում են երկցիաներկամիդը բարձր ճնշման տակ տաքացնելով: Օգտագործում են մելամինմրջնալդեհիդային խեժերի, իոնափոխանակային խեժերի, դաբաղանյութերի, կոռոզիայի արգելակիչների, *ներկանյութերի*, հերբիցիդների, հեքսաքլորմելամինի (գազազերծող նյութ) արտադր–յան մեջ:



ՄԵԼԱՆԵԶԻԱ, Օվկիանիայի կղզեխմբերից Խաղաղ օվկ–ի հվ–արմ–ում: Գլխ. կղզիներն ու կղզեխմբերը՝ Նոր Գվինեա, Ֆիջի, Բիսմարկի կղզեխումբ, Սողոմոնի կղզիներ, Նոր Հեբրիդներ, Նոր Կալեդոնիա: Տարածքը՝ շուրջ 1 մլն *կմ*²: Խոշոր կղզիներն ունեն լեռն. մակերևույթ (բարձր.՝ մինչև 5030 *մ*, Նոր Գվինեա կղզի): Ծածկված են խոնավ արևադարձ. և մուսսոն. անտառներով ու սավաննաներով: Զարգացած է արևադարձ. երկրագործությունը:

ՄԵԼԱՆԵԶԻԱՑԻՆԵՐ, ազգակից ժողդ–ների խումբ, Մելանեզիայի արմատ. (բացառությամբ Նոր Գվինեայի բնակչության մեծ մասի) բնակչությունը: Մենաթիվ ժողդ–ները՝ տակիա, մոտու, բուկավա (Նոր Գվինեայում և մերձակա կղզիներում), տոլաի, գիմի (Բիսմարկի կղզեխմբում), էֆատե, ամբաե (Նոր Հեբրիդներում), կանակներ (Նոր Կալեդոնիայում), ֆիջիցիներ (Ֆիջիում) ևն: Ընդհ. թիվը՝ մոտ 2,2 մլն (2010): Խոսում են մելանեզյան լեզուներով: Հիմնականում քրիստոնյա են, կան նաև ավանդ. հավատալիքների հետևորդներ:

ՄԵԼԱՆԵԶՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, Մելանեզիայում, Պապուայից մինչև Նոր Գվինեա, Յապից մինչև Ֆիջի կղզիներ տարածված շուրջ 400 օվկիանյան լեզուների հավաք. անվանումը: Ազգակց. ընդհանրություններ չունեն: Ներառում են օվկիանյան բոլոր լեզուները՝ բացի միկրոնեզյան և պոլինեզյան լեզուներից: Ավստրոնեզ. լեզուների առանձին ճյուղ են:

ՄԵԼԱՆԺ, 1. (քիմիա) խիտ ազոտական և ծծմբական թթուների խառնուրդը՝ 9:1 ծավալ. հարաբերությամբ: Օգտագործում են ծծմբական թթվի՝ աշտարակային եղանակով արտադր–յան մեջ: 2. (Երկրբ.) լեռն. ապարների համալիր. կազմված է գերհիմք. ապարների մեծաբեկորներից, հիմք. լավաներից և տուֆերից, փոխակերպ. ապարներից, հասպիսներից ու կրաքարերից, որոնք անկանոն տեղաբաշխված են կոտորակման և փոխադարձ տեղաշարժման հետքերով: 3. **Ձվի Մ.**, ձվի սպիտակուցի և դեղնուցի սառեցված խառնուրդ: Օգտագործում են հիմնականում հրուշակեղենի արտադր–յան մեջ:

ՄԵԼԱՆԻԶՄ (հուն.՝ melas, սեռ. հոլ.՝ melanos – սև), ֆենոտիպ, օրգանիզմի որևէ տեսակի մոտ մուգ գունավորված անհատների առավել տարածվածությունը: Կենդանիների արտաքին ծածկույթների սև, դարչնագույն կամ գորշ գունավորումը պայմանավորված ***մելանին*** գունակով, առաջանում է ժառանգ. փոփոխությունների հետևանքով և կարող է ձեռք բերվել բնական ընտրությամբ:

ՄԵԼԱՆԻՆՆԵՐ, դարչնագույն և սև գունակներ: Լայնորեն տարածված են բուս. և կենդ. հյուսվածքներում: Որոշում են մաշկածածկույթների և նրա հավելումների, պտուղների կեղևի ևն գույնը: Բացակայում են ալբինոսների մոտ: Թիրոզինն ամինաթթվի օքսիդացման փոխարկումների նյութեր են:

ՄԵԼԱՆԽՈԼԻԿ (հուն.՝ melain chole – սև մաղձ), անձի խառնվածքի ***հիպոկրատի*** տարբերակած 4 տիպերից մեկը, որը բնութագրվում է ընկճվածությամբ, թախծոտ և ճնշված տրամադրությամբ և զգացմունքների հարաբերականորեն սակավ արտահայտմամբ:

ՄԵԼԱՆՈՋ, մաշկում, աչքի ցանցաթաղանթում և այլ օրգաններում ու հյուսվածքներում ***մելանինների*** ուժեղացած առաջացումն ու կուտակումը: Տարբերում են բնածին Մ. (գունակ. բնածին խալեր) և ներզատ. խանգարումների (բրոնզախտ) ու որոշ թունավորումների (մկնդեղով, ածխաջրածիններով) ժամանակ առաջացած Մ.:

ՄԵԼԱՆՈՄԱ (< հուն. melas, սեռ. հոլ.՝ melanos – սև, մուգ և ...*ոմա*), առավելապես մաշկի (հազվադեպ՝ աչքի ցանցենու, գլխուղեղի, լորձաթաղանթների) չարորակ ուռուցք, որն առաջանում է մուգ գունակներ՝ ***մելանիններ*** արտադրող բջիջներից (սովորաբար՝ բնածին խալերից):

«ՄԵԼԱՆՏԵ», տրիկոտաժի արտադր. ձեռն.: Հիմնադրվել է 2002–ին Երևանում: Արտադրում է կանանց, տղամարդկանց և մանկ. տրիկոտաժ:

ՄԵԼԱՆՔԹՈՆ ԵՎ ՀԱՅԿ ԱՐՄԼԱՆՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ, Համազգ. մշակութ. միության երկսեռ երկրորդ. ուս. հաստատություն Բեյրութում: Հիմնադրել են Լևոն Շանթը և Նիկոլ Աղբայանը 1930-ին: Սկզբում կոչվել է Հայ ճեմարան, 1950-ից՝ Համազգայինի Նշան Փալանճյան ճեմարան (բարերարի անունով), 1988-ից՝ Մ. և Հ. Ա. ճ.: 1991-ից ճեմարանին կից գործում է Նորսիկյան մանկապարտեզը:

ՄԵԼԱՏՈՆԻՆ, մարդու և ողնաշարավոր կենդանիների նյարդահորմոն: Կաթնասունների մոտ արտադրվում է հիմնականում կոնաձև գեղձում (էպիֆիզ): Կասեցնում է սեռ. հասունացումը, հասուն անհատների մոտ ընկճում է ֆոլլի- և լյուտրոպինի ներզատումը, ազդում կեղոցի, դաշտան. ցիկլի սկսման, հորմոնների ներզատման օրական և տարեշրջանային, ռիթմերի, հոգեկան խանգարումների ձևավորման ևնի վրա: Երկկենցաղների և ձկների ծածկույթների գույնը բացացնում է: Հայտնաբերվել է նաև մի շարք անողնաշարների, բույսերի, բակտերիաների և նախակենդանիների Մ:

ՄԵԼԲՈՒՌՆ (Melbourne), ք. Ավստրալիայի հվ-արլ-ում, նվինգստ Պորտ Ֆիլիպ ծոցի ափին, Վիկտորիա նահանգի վարչ. կենտրոնը: Բն.՝ 3,9 մլն (արվարձաններով, 2009): Ունի օդանավակայան: Երկրի խոշորագույն գործարար և ֆին. կենտրոններից է: Կան մեքենաշին., սև մետաղաձուլ., նավթավերամշակման, տեքստիլ, սննդի, թղթի արդ-յան և այլ ձեռն-ներ: Գործում են բազմաթիվ համալսարաններ, թանգարաններ (Վիկտորիայի ազգ. ևն) և թատրոններ: Հիմնադրվել է 1830-ին: 1901–13-ին եղել է Ավստրալ. Միության մայրաքաղաքը: Մ-ում տեղի են ունեցել XVI օլիմպ. խաղերը (1956): Կորոլյովի շենքերը, ցուցահանդեսներն ու Կաղլտոն այգիները Համաշխ. ժառանգության օբյեկտ են:

Մ-ի հայ համայնքը կազմավորվել է 1960-ական թթ-ի սկզբին: 1966-ին այստեղ բնակվել է 1500, 1976-ին՝ 4500, 2003-ին՝ 10 հզ. հայ: Համայնքում գործում են Սբ Աստվածածին առաքել. եկեղեցին (կից՝ Ակինյան շաբաթօրյա դպրոցը) և կաթոլիկ եկեղեցի, ինչպես նաև Համազգայինի Մեսրոպ Մաշտոց մեկօրյա վարժարանը (1985-ից), եկեղեցասեր տիկնանց, երիտասարդ., պատանեկան միությունները, ՀԲԸՄ, ՀՄԸՄ Մ-ի մասնաճյուղերը, պոլսահայերի կազմած Սահակյան մարզ. միության ֆուտբոլի թիմերը, պարախումբ և երգչախումբ ու հայկ. ռադիոժամ: 1966-ից Մ-ում լույս է տեսնում *«Յոյս»* ամսագիրը:

ՄԵԼԲՈՒՌՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Ավստրալիայի պետ. համալսարանը: Հիմնադրվել է 1853-ին: 2015-ին ուներ ավելի քան 49 հզ. ուսանող:

ՄԵԼԳՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է 1924-ին (պաշտոնապես բացվել է 1926-ին) Կիպրոսի Նիկոզիա ք-ում՝ Գրիգոր և Կարապետ *Մելքոնյանների* կտակով, ՀԲԸՄ-ի հովանավորությամբ: Սկզբում՝ երկսեռ որբանոց-նախակրթարան, 1927-ից՝ բարձրագույն նախակրթարան, 1934-ից՝ երկրորդ. գիշերօթիկ վարժարան (առանց նախակրթարանի), 1940-ից՝ բարձրագույն երկրորդ. վարժարան՝ ճեմարան., առևտր. և գիտ. բաժիններով: Մ. կ. ի-ում սովորել են հայ երեխաներ Սփյուռքի տարբեր գաղթավայրերից, 1990-ից՝ նաև ՀՀ-ից: Ունեցել է ավելի քան 1500 շրջանավարտ: Լույս է ընծայել *«Այգ»* տարեգիրքը, նաև այլ պարբ-ներ: Փակվել է 2007-ին:

ՄԵԼԵԹՅԱՆ Հարություն Ռուբենի (1925–1997), կրտսեր լեյտ.: ԽՄ հերոս (1945): Հերոսի կոչման արժանացել է 1945-ի հունվ-ին՝ Օդերի գետանցման ու նրա ձախ ափին հենակետ գրավելու և ընդարձակելու համար:

ՄԵԼԵԺ Իվան Պավլովիչ (1921–1976), բելառուս գրող: ԲԽՍՀ ժող. գրող (1972): Հեղինակ է ՀՄՊ-ի մասին «Մինսկի ուղեգիր» (1949–52), «Ճահճուտի մարդիկ» (1962, հայ.՝ 1975), «Ամպրոպի հևքը» (1966, հայ.՝ 1975), «Ձյունամրրիկ, դեկտեմբեր» (հրտ.՝ 1978) և այլ վեպերի, «Վեպ պոլեսյան ժամանակագրությունից» (1961–65, հայ.՝ 1975) դյուցազներգության, նաև պատմվածքների, պիեսների:

Լ. Ենինյան (1972), ԲԽՍՀ Պետ. (1976) մրց-ներ:

ՄԵԼԵՏԻ (աշխարհիկ անունը՝ Սաքսիմ Գերասիմովիչ Սմոտրիցկի, մոտ 1577–1633), Պոլոցկի արք. (1620–28), բանասեր, գրող: Արևելասլավոն. բարոկկոյի հիմնադիրներից: Կազմել է եկեղեցասլավոն. առաջին քերակ-ը (1619, 1648-ին և 1721-ին հրատարակվել է Մոսկվայում): Հեղինակ է տրակտատների («Ֆրինոս», 1610, ևն):

ՄԵԼԻԱՍ, Մլեհ Մեծ (ծ. թ. անհտ–934), հայազգի բյուզանդացի ռազմ. գործիչ: 917-ին մասնակցել է բուլղարների ցար Սիմեոնի դեմ պատերազմին: Նշանակվել է Եփրատիա գվո-ի (Տիվրիկի շրջան) տուրմաք (վարչ. շրջանի զինվ. հրամ.): Ստացել է մագիստրոսի պատվաստիճան: Մ-ի կերպարն արտացոլվել է «Դիգենիս Ակրիտաս» բյուզ. էպոսում (Մերեմենիս՝ Մլեհ Մեծ):

ՄԵԼԻԵ (Meslier) Ժան (1664–1729), ֆրանսիացի փիլ., գյուղ. քհն.: Մ-ի հայացքները շարադրված են «Կտակ» (հրտ.՝ 1864) աշխ-յան մեջ: Մ. առաջինն է մեխանիստ. մատերիալիզմը հանգեցրել մարտնչող մատերիալիզմին, փորձել է նրան հաղորդել սոցիալ-քաղ. արմատականություն՝ դառնալով XVIII դ-ի ֆրանս. մատերիալիզմի նախահայրը:

ՄԵԼԻԵՍ (Melies) Ժորժ (1861–1938), ֆրանսիացի ռեժ.: Կինոյի նախակարապետներից: 1896-ից նկարահանել է շուրջ 4000 կինոժապավեն («Ճանապարհորդություն դեպի Լուսին», 1902, «Սատանայի 400 կատակը», 1906, ևն): Ֆանտաստիկ հեքիաթային ֆեերիայի ստեղծողը, մի շարք կինոհնարքների հեղինակ:

ՄԵԼԻՍ ԱՄՄՈՍԱՅԻ (մ. թ. ա. 470–430), հույն փիլ., էլեաթների դպրոցի ավանդույթի համակարգողն ու վերջին ներկայացուցիչը:

ՄԵԼԻՏԵ Ա. ՄԱՆԱԶԿԵՐՏՅԻ (ծ. թ. անհտ–456), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 452-ից՝ Աղբիանոսյանների հոգևոր տոհմից: Մասնակցել է Շահապիվանի 444-ի (որպես երեց) և Արտաշատի 449-ի (որպես եպս.) ժողովներին:

ՄԵԼԻՔ Հակոբ (1817–մ. թ. անհտ), հաս. գործիչ, ճարտ., Վալաքիայի 1848-ի հեղ-յան մասնակից: 1858-ին՝ Վալաքիայի 21 ազգ. գործիչների հետ ստորագրել է «Հավատքի դավանանք» փաստաթուղթը, որը ժողդ-ին կոչ էր անում միավորվել և ստեղծել միասն. Ռումինիա: Եղել է Բուխարեստի հայկ. համայնքի հոգաբարձության ղեկ-ը (1847-ին և 1858-ից): Նախագծել է Բուխարեստում՝ Հաղթ. կամարը (1848), Կ. Պոլսում՝ Ճեզայիրլի ամիրայի ապարանքը (1850), Արճեշ գետի (Ռումինիա) կամուրջը (1857) ևն: Հրատարակել է «Արևելքը Արևմուտքի առջև» (ֆրանս., 1856) գիրքը:

ՄԵԼԻՔ Ռուբեն (Մելիք-Մինասյանց Ռուբեն Լևոնի, 1921–2007), բանաստեղծ: Գրել է ֆրանս.: *«Նոտրը վուա»* պարբ-ի խմբ.: Հեղինակ է «Աշխարհի ակորդներ» (1946), «Հորիզոն անցնողները» (1948), «Մադամ Լորելեյ» (1949), «Մեր երջանկության օպերան» (1950), «Քրիստափոր Կոլումբոս» (1952), «Լինչ» (1954), «Ուր արյուն է հոսել» (1955), «Ապրելու ժամանակը» (1957), «Միացյալ երգը» (հ. 1, 2, 1960, 1967), «Քարե հսկողը» (1961), «Ստորգետնյա եղանակներ» (1961), «Կամայական պոեմ» (1966), «Մարմինս, ինձնով կենդանի» (1976, հայ.՝ 1978, 2007), «Թափոր» (1984) բանաստեղծությունների ժող-ների: Մ. կազմել է և 1975-ին Փարիզում ֆրանս. հրատարակել «Հայ բանաստեղծություն (V դ–ից մինչև մեր օրերը)» անթոլոգիան:

Գ. Ապոլիների, Ֆրանսիայի ակադ-ի Մեծ, Ֆրանսիայի ԳՄ (1976), ՀԽՍՀ ԳԱ Մեսրոպ Մաշտոցի անվ. (1986) մրց-ներ:

ՄԵԼԻՔ (Մելիքյան) Սոս Եփրեմի (1914–մ. թ. անհտ), նկարիչ: 1922-ից՝ Նյու Յորքում: Ստեղծել է հիմնականում դիմանկարներ (Լ. Կոտովսկու, Ֆ. Շալյապինի, հոր՝ Եփրեմ Մելիք Զաղեի, եղբոր՝ Զավեն Մելիքի և ուր.), նաև գծանկարի ճանաչված վարպետ է:

ՄԵԼԻՔ (արաբ.՝ malik – տեր, տիրակալ, արքա), Առաջավոր Ասիայի երկրների մահմեդ. տիրակալները միջին դարերում: XIV–XVIII դդ-ում Իրանում և Արլ. Հայաստանում «Մ.» են կոչվել նաև մեծ ավանների և քաղաքային թաղամասերի ավագները, որոնք պատասխանատու էին պետ. հարկերի ու տուրքերի գանձման համար: Սյունիքում և Արցախում Մ-ական իրավունքը թեև հաստատվել է շահի հրովարտակով, սակայն ունեցել է ժառանգ. բնույթ:

ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ Ալեքսանդր Արտաշեսի (1928–1975), թերապևտ: Բժշկ. գիտ. դ-ր (1974), պրոֆ. (1974): Արտաշես *Մելիք-Ադամյանի* որդին: Աշխ-ները վերաբերում են սրտաբանության և թոքաբանության հարցերին: 1961–62-ին՝ ԱՀԿ փորձագետ Սոմալիում:

ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ Արտաշես Ալեքսանդրի (1885–1949), թերապևտ: Բժշկ. գիտ. դ-ր (1937), պրոֆ. (1928): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1940): Ալեքսանդր *Մելիք-Ադամյանի* հայրը: Աշխ-ները վերաբերում են կլիմայաբուժության, խաղողաբուժության, սրտամկանի ինֆարկտի ախտորոշման, ռևմատիզմի և ներքին հիվանդությունների հիմնախնդիրներին: ՀՀ ԱՆ գիտաբժշկ. խորհրդի հիմնադիր-ղեկ., ռևմատիզմի կոմիտեի նախագահ: Մ-Ա-ի անունով է կոչվել ԵՊԲՀ հոսպիտալ. թերապիայի կլինիկան:

ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼՅԱՆ Աբրահամ Սահակի (ծ. թ. անհտ–1811), հաս. գործիչ, Երևանի հայ ազգաբնակչության մելիք: Սահակ *Մելիք-Աղամալյանի* հայրը: Կոտայքի գվո-ում տիրել է մի քանի գյուղերի և մեծ համարում ունեցել Պարսկաստանի խանի արքունիքում: 1804-ի Երևանյան արշավանքի ժամանակ իրեն ենթակա բնակչության հետ տեղափոխվել է ռուս.

սահմանները՝ Փամբակ: Ռուս. կառ–յունը նրան շնորհել է ազնվականի տիտղոս:

ՄԵԼԻՔ–ԱՂԱՄԱԼՅԱՆ Աղամալ Սիմոնի (1830–1906), թառահար: Նվագել է նաև քամանչա և թութակ: Երկացանկում՝ «Բայաթի–Քուրդ», «Բայաթի–Շիրազ», «Հեյդարի», «Շահնազ», «Չարգյահ», «Նովրուզ–Արաբի», «Նավա», «Սեգյահ», «Շյուշթար» և այլ մուղամներ ու դաստգյահներ (գրառումը և դաշնամուր. մշակումը՝ Նիկողայոս *Տիգրանյանի*):

ՄԵԼԻՔ–ԱՂԱՄԱԼՅԱՆ Սահակ Աբրահամի (ծ. թ. անհտ–1834), հաս. գործիչ: Աբրահամ *Մելիք–Աղամալյանի* որդին: Երևանի վերջին սարդար Հուսեին–Ղուլի խանի մերձավոր պաշտոնյաներից և խանության հայկ. հետևազորի հրամ–ը: 1826–28–ի ռուս–պարսկ. պատերազմում մեծ ծառայություններ է մատուցել ռուս. զորքին: *Հայկական մարզի* ստեղծումից (1828) հետո, որպես հայ բնակչության ներկայացուցիչ, անդամակցել է մարզային վարչությանը:

ՄԵԼԻՔ–ԱՂԱՄԱԼՅԱՆՆԵՐ, մելիք. տոհմ Հայաստանում: Կառավարել են Երևանի խանության հայ ազգաբնակչությանը XVII դ–ի 2–րդ կեսից՝ Երևանի սարդարի ընդհ. իշխանության ներքո: Գլխավորել են տեղ. հայկ. հետևազորը: Նշանավոր էին Մելիք–Աբրահամը, Մելիք–Սահակը: Երևանի խանությունը Ռուսաստանին միանալուց (1828) հետո գրկվել են մելիք. տիտղոսից:

ՄԵԼԻՔ–ԱՂԱՄԻՐՅԱՆ Հմայակ Ռոստոմի (1887–1986), քիմիկոս, ճարտարագետ–տեխնոլոգ: Տեխ. գիտ. թեկնածու (1954): Եղել է ՀԽՍՀ Պետպլանի նախագահի տեղակալ (1935–37): Մասնակցել է Երևանի ձեթ–օճառի գործարանի (1923), Կիրովականի քիմ. կոմբինատի (1928–34–ին՝ տեխ. տնօրեն), Երևանի սինթետիկ կաուչուկի գործարանի (1934–37–ին՝ տեխ. տնօրեն) և այլ գործարանների հիմնադրմանը: Անհիմն բռնադատվել է (1937–44), 1954–ին՝ արդարացվել:

ՄԵԼԻՔ–ԱՆԴՐԵԱՍՅԱՆ Գայանե Գուրգենի (ծ. 1954), վիրուսաբան, համճարակաբան: Բժշկ. գիտ. դ–ր (2005): Աշխ–ները վերաբերում են վիրուսային վարակների, հատկապես՝ տարբեր ուղիներով փոխանցվող վիրուս. լյարդաբորբերի համաճարակաբանության և ախտորոշման խնդիրներին:

ՄԵԼԻՔ–ԱՎԱԳՅԱՆ Գրիգոր Գևորգի (1920–1994), կինոռեժ., սցենարիստ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1974): 1952–ից՝ Հայֆիլմի ռեժ. («Յոթ երգ Հայաստանի մասին», 1967, «Հավերժության ծառան», 1991, երկուսն էլ՝ վավերագր., «Մոր սիրտը», «Ինչու է աղմկում գետը», երկուսն էլ՝ 1958, «Խնձորի այգին»՝ ըստ Ս. Զորյանի, 1985, երեքն էլ՝ գեղ., ևն): Նկարահանվել է կինոյում («Քանի դեռ ապրում ենք», 1986, Հայֆիլմ):

ՄԵԼԻՔ–ԲԱԽՇՅԱՆ Ստեփան Տիգրանի (1924–1998), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1965), պրոֆ. (1969): Աշխ–ները վերաբերում են միջնադար. Հայաստանի պատմությանը («Պավլիկյան շարժումը Հայաստանում», 1953, «Հայաստանը VII–IX դարերում», 1968, ևն): Համահեղինակ է «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» (հ. 1–5, 1986–2001):

ՄԵԼԻՔ–ԲԵԳԼԱՐՅԱՆՆԵՐ, մելիք. տուն Արցախի Խաչեն գավ–ում: Տոհմի իշխանությունն առաջացել է XVII դ–ի սկզբին: Իշխանանիստը Գյուլիստան ամրոցն էր, նաև Թալիշ գ. (այժմ՝ ԼՂՀ–ում): Երկրամասը Ռուսաստանին միանալուց (1813) հետո տոհմիկ ազնվականների կարգավիճակով Մ–Բ–ի ժառանգներն անցել են ռուս. ծառայության:

ՄԵԼԻՔ–ԳՐԻԳՈՐՅԱՆ Գերասիմ (1883–1974), պետ. գործիչ, բժիշկ: 1921–48–ին եղել է հանրապետության տարբեր քաղաքների գլխ. բժիշկ, 1948–59–ին՝ Երևանի սանիտարահամաճարակ. կայանի պետ:

Լենինի (2), Հոկտ. հեղ–յան, Աշխ. կարմիր դրոշի շքանշաններ:

ՄԵԼԻՔ–ԵԳԱՆՅԱՆՆԵՐ, Մելիք–Ավանյաններ, մելիք. տուն Արցախի Դիզակ գավ–ում (աթոռանիստը՝ Տող ավան): XVI դ–ի 1–ին քառորդում Դիզակի իշխանության (տես *Դիզակի մելիքություն*) տեր Եգանը կարևոր դեր է կատարել ազատագր. կռիվներում: Արցախը Ռուսաստանին միանալուց (1813) հետո Մ–Ե. գրկվել են մելիք. իրավունքներից և ռուս. կառ–յունից ստացել տոհմիկ ազնվականների իրավունքներ:

ՄԵԼԻՔ–ԹԱՆԳԻԵՎ Զավեն Իվանի (1905–1966), ճարտարագետ–տեխնոլոգ: 1938–50–ին՝ Բաքվի Ազնեֆթեպրոյեկտ ինստ–ի, 1950–66–ին՝ Ազնեֆթ միավորման Ազմորնեֆթստրոյ տրեստի գլխ. ճարտարագետ: Մասնակցել է Նավթային քարեր քտա–ի նախագծման և կառուցման աշխ–ներին: Լենինյան մրց. (1961):

ՄԵԼԻՔ–ԹԱՆԳՅԱՆ Ներսես (Նիկողայոս, 1866–1948), եկեղեց. գործիչ, բանասեր: Արք. (1917): 1912–48–ին՝ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ: Հեղինակ է «Աշխարհաբարի քերականութիւն» (1893), ««Մշակ» և «Նոր դար»: Կուսակցություններ և մի քանի խնդիրներ» (1894), «Հայոց եկեղեցական իրաւունքը» (գիրք 1, 2, 1903, 1905), «Շուշուց դէպի Հին–Նախիջեւան» (հրտ.՝ 2008) աշխ–ների:

ՄԵԼԻՔ–ԻՍՐԱՅԵԼՅԱՆ Սուրեն Սամսոնի (1908–1975), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1967), պրոֆ. (1970): Աշխ–ները վերաբերում են վիրաբուժ. ախտաբանության, ջերմ. այրվածքների ախտածնության և բուժման խնդիրներին:

ՄԵԼԻՔ–ԽԱՉԱՏՐՅԱՆ Ջուլիետա Հայկի (ծ. 1929), բուսաբան–սնկաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1971), պրոֆ. (1973): 1995–ից՝ ԱՄՆ–ում: Աշխ–ները վերաբերում են սնկերի կարգաբանությանը, կենսաքիմիային, էկոլոգիային: Ուսումնասիրել է Հայաստանի գլխարկավոր սնկերը:

ՄԵԼԻՔ–ՀՈՎՍԵՓՅԱՆ Վարդան Ադամի (1877–1908), դերասան: 1897–1902–ին խաղացել է Բաքվի հայոց մշտական դերասան. խմբում (Գիքո՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», Հորացիո՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», Զվեզդիչ՝ Մ. Յ. Լերմոնտովի «Դիմակահանդես», ևն): Վլադիմիր Մեղնիկով կեղծանունով հանդես է եկել Ռուսաստանի տարբեր քաղաքների թատրոններում:

ՄԵԼԻՔ–ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Աշոտ Սմբատի (1900–1972), ճարտարագետ–շինարար: ՀԽՍՀ վաստ. շինարար (1957): Երևանում կառուցել է ՕԲԹ–ի շենքը, «Արարատ» տրեստի գինու մառանները, հաստոցաշին., պահածոների, կաուչուկի, կաբելի, ավտոդողերի, «Պոլիվինիլացետատ» գործարանները: Շին–յան մեջ ներդրել է հավաքովի երկաթբետոնի, 25 *սմ* հաստյամբ պեմզաբլոկե պատերի, արդ. շենքերում պայթյունաանվտանգ ծածկերի կիրառումը:

ՄԵԼԻՔ–ՄՈՒՄՅԱՆ Բաբկեն Մկրտչի (1893–1960), ակնաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1948), պրոֆ. (1949): Աշխ–ները վերաբերում են աչքի հիվանդությունների ախտորոշման, կանխարգելման ու բուժման խնդիրներին: Մշակել է տրախոմայի բուժման ինքնատիպ եղանակ՝ սուլֆիդինի լուծույթի ներերակ. ներարկումներով: ԽՍՀՄ–ում առաջինն է ներդրել (1957–ին, Հրանտ Դեմիրչօղլյանի հետ) էլեկտրացանցենագրության եղանակը:

ՀԽՍՀ ակնաբույժների ընկ–յան հիմնադիր–նախագահ:

ՄԵԼԻՔԲԱՆ (Մելիքով) Բալա Գրիգորի (1888–1935), թառահար: Թառահար Գրիգոր Մելիքովի (1859–1929) որդին: 1922–ին և 1932–ին Թիֆլիսում ստեղծել է արլ. գործիքների անսամբլ, 1930–ին՝ ժող. գործիքների եռյակ, որոնց մենակատարն ու նվագակցողն էր: Կատարումներից պահպանվել են մուղամների («Սահուր Հինդի» ևն) ձայնագրությունները:

ՄԵԼԻՔԲԱՆ Ալեքսանդր Նիկոլայի (1877–1969), ճարտարագետ–տեխնոլոգ: ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1946): 1908–15–ին մասնակցել է Երևանի ջրմուղի նախագծման և կառուցման աշխ–ներին: Երևանում հիմնադրել է շին., էլեկտրատեխ., քիմիա–տեխնոլոգ. (1923–31–ին՝ տնօրեն) տեխնիկումները: 1941–46–ին՝ ԵՊՀ պրոռեկտոր:

ՄԵԼԻՔԲԱՆ Ալեքսանդր Պավելի (1935–2008), բուսաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1974), պրոֆ. (1974): Բացահայտել է, որ սերմնամաշկի կառուցվածքի տվյալները կարելի է օգտագործել սերմատու բույսերի կարգաբանության և տարբեր ծավալների տաքսոնոմ. խմբերի ֆիլոգենիայի հարցերի որոշման համար:

ՌԳԱ բուսաբ. ընկ–յան անդամ (1964–ից), Բնախույզների մոսկովյան ընկ–յան բուսաբ–յան բաժանմունքի նախագահ (1992–ից):

ՄԵԼԻՔԲԱՆ Անդրեաս Շամավոնի (ծ. 1963), գյուղատնտես: Գղտ. գիտ. դ–ր (2003), պրոֆ. (2008): Գյուղաջակցության «Ագրո–Х» հիմնադրամի տնօրեն (2001–ից): Աշխ–ները վերաբերում են մշակովի բանջարաբույսերի վայրի ազգակիցների ծագումնաբանությանը, գենոֆոնդի պահպանությանը, ինչպես նաև վայրած ուտելի և օգտ. բուսատեսակների տեսակ. կազմի, նրանց տարածման արեալների պարզաբանմանն ու մշակության մեջ ներդրմանը:

ՄԵԼԻՔԲԱՆ Արիկ Արտավազդի (1944–2009), կիրառ. մաթ–ի բնագավառի գիտնական: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1986), պրոֆ. (1991): ՀՀ ԳԱԱ արտ. (2008), ՌԳԱ թղթ. (2003) անդամ: Աշխ–ները վերաբերում են դինամիկայի խաղային խնդիրներում լավարկ. (օպտիմալ), նաև եզակի (սինգուլյար) շարժումների կառուցման հարցերին: ՌԴ Պետ. մրց. (1998):

ՄԵԼԻՔԲԱՆ Արմեն Հովիկի (ծ. 1942), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1984), պրոֆ. (1990): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2014): Դիտարկել է ոչ ներդաշնակ երևույթները բյուրեղներում, զարգացրել բյուրեղների վիճակի հավասարման տեսությունը: Ուսումնասիրել է լազեր. ճառագայթման հաճախության փոխակերպման շարժընթացները, ճառագայթման տարածումը հոծ միջավայրում և ցրումն ատոմներից:

ՄԵԼԻՔԲԱՆ Արմեն Ռաֆայելի (ծ. 1961), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1994), պրոֆ. (1995): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006): Աշխ–

նները վերաբերում են ընդերադիտ. վիրաբուժության եղանակների մշակման և գործնականում ներդրման հարցերին: ՀՀ ընդերադիտ. վիրաբուժ. ընկերակցության նախագահ (1995–ից), «Հայաստանի ընդերադիտական վիրաբուժություն» (ռուս.) հանդեսի գլխ. խմբ. (2002–ից):

ՀՀ «Մխիթար Հերացի» մեդալ (2009):

ՄԵԼԻՔՅԱՆ Արշավիր Միքայելի (1879–1937), հեղ., կուս. գործիչ, հրապարակախոս, խմբ-հրտ.: Պրոֆ. (1932): 1913-ին Երևանում հիմնադրել է *«Խօսք»* շաբաթաթերթը, որը փակվել է № 17-ից հետո, 1918–19-ին վերահրատարակել՝ որպես ՌՍԴԲԿ Երևանի կազմ-յան պաշտոնաթերթ: Հեղինակ է հայ հաս. մտքին, մամուլի պատմությանը վերաբերող աշխ-ների: Անհիմն բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ՄԵԼԻՔՅԱՆ Արսեն Արտուշի (1935–2012), ճարտ.: ԵԳԱ (1986) և ԵՊՃՇՀ (2000) պրոֆ.: Մ-ի նախագծերով Երևանում կառուցվել են գիշերօթիկ (1962) և ՆԳՆ (1965, համահեղ.), Ա. Ազարյանի անվ. պատանի մարմնամարզիկների (1972) դպրոցները, «Շիրակ-1» (1973), «Շիրակ-2» (2002–06, երկուսն էլ՝ համահեղ.) հյուրանոցները, Սևանի ափին՝ «Ծիծեռնակ» միջազգ. երիտասարդ. ճամբարը (1971): Համահեղինակ է «Երևան» (ռուս., 1968), «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը» գրքերի: Խորհրդ. ճարտ-յան 1962–67-ի նվաճումների համամիութ. ստուգատեսի դափնեկիր: ՀԼԿԵՄ մրց. (1971):

ՄԵԼԻՔՅԱՆ Գագիկ Գեորգիի (ծ. 1951), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դ-ր (1990), Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆ.: ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (2008): Աշխ-ները վերաբերում են չհագեցած համակարգերի ռադիկալ. և էլեկտրոֆիլ ռեակցիաների օրինաչափություններին: Առաջարկել է ֆերոմոնների սինթեզի նոր եղանակներ:

Ամերիկ. քիմ. ընկ-յան անդամ:

ՄԵԼԻՔՅԱՆ Գագիկ Սուրենի (ծ. 1945), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դ-ր (1994), պրոֆ. (2000): Աշխ-ները վերաբերում են թթվածին, ազոտ, ծծումբ պարունակող տարացիկլ. (այդ թվում՝ կենսաբանորեն ակտիվ) միացությունների սինթեզին և քիմ. հատկություններին:

ՄԵԼԻՔՅԱՆ Գուրգեն Վրեժի (ծ. 1936), արևելագետ, բանասեր, լեզվաբան: Բանասիր. գիտ. թեկնածու (1984), պրոֆ. (2009): ՀՀ վաստ. մանկավարժ (2012): Արցախի հոգևոր թեմի ատենապետ (1989–ից, 2013–ից՝ պատվ.): Աշխ-ները վերաբերում են պարսկ-ի քերակ-յան, պարսկ. բանասիրության, հայ-ի ու պարսկ-ի փոխառնչությունների հարցերին: 1988–94-ին գործուն մասնակցություն է ունեցել Արցախի ազգ-ազատագր. պայքարին. ԼՂՀ է ուղարկել կապի միջոցներ, մարդասիր. օգնություն: 1993–99-ին՝ ԼՂՀ ՊԲ փոխհրամ., գնդ. (1996): 1998-ից՝ «Գուրգեն Մելիքյան. Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հիմնադիր-տնօրեն:

ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի (1999), «Մեսրոպ Մաշտոց» (2006), ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի (2016) շքանշաններ, ՀՀ «Մովսես Խորենացի» (2006), ԵՊՀ (2007), ԿԳՆ (2008) ոսկե, ԱԺ պատվո (2016) մեդալներ, Ֆրիտյոֆ Նանսենն հիմնադրամի (2004), ԼՂՀ վարչապետի (2016) հուշամեդալներ:

ՄԵԼԻՔՅԱՆ Դերենիկ Կարոյի (ծ. 1959), լրագրող, խմբ.: 1992–ից՝ Թեհրանի *«Ալիք»* օրաթերթի աշխատակից, 2004–ից՝ գլխ. խմբ.: Հեղինակ է «Ձայն մը հնչեց... Պոլսէն... Դինքի հետ եւ առանց Դինքի» (2007), «20-րդ դարասկզբի հրանահայ մամուլը» (2010) գրքերի: ՀՀ ՄՆ «Վիլյամ Սարոյան» մեդալ (2011):

ՄԵԼԻՔՅԱՆ Զոհրաբ Աշոտի (ծ. 1940), շինարար: Տեխ. գիտ. դ-ր (1988), պրոֆ. (1992): Աշխ-ները վերաբերում են ջերմազազամատակարարման, օդորակման, սառնարան. տեխնիկայի և ջերմ. պոմպերի մշակման հարցերին: Ստեղծել է այդ համակարգերի համալիր վերլուծության եղանակներ: Էներգետիկ. ճարտարագիտ. միջազգ. ընկերակցության անդամ (1996):

ՄԵԼԻՔՅԱՆ Խաչատուր Բեգլարի (1911–1942), ավագ լեյտ.: ԽՄ հերոս (հետմահու, 1942): Հերոսի կոչման արժանացել է 1942-ի հունվ-ին Օբոյան ք-ի (Կուրսկ-Բելգորոդ ճանապարհին) ազատագրման մարտերում ցուցաբերած խիզախության համար:

ՄԵԼԻՔՅԱՆ Կոստանդին Ալեքսանդրի (ծ. 1939), ճարտարագետ-մեխանիկոս: Տեխ. գիտ. դ-ր (1988): ՀՃԱ (1992), ՄՃԱ (1992), ՌՃԱ (1993) անդամ: 1976–87-ին՝ «Ալգորիթմ» ԳՀ կենտրոնի տնօրեն, 1987–91-ին՝ Հայկ. հաշվող. տեխնիկայի և տեղեկագիտ. ԳԱՄ-ի գլխ. տնօրեն: 2004-ից՝ Մոսկվայում: Աշխ-ները վերաբերում են ԷՀՄ-ների հիշող սարքերին, հաշվող. և կառավարող համակարգերի ստեղծման, ծրագրային ու տեխ. մեծ համակարգերի մաթ. ապահովման տես. մշակման ու կիրառման հարցերին:

ՄԵԼԻՔՅԱՆ Հենրիկ Սասունիկի (1926–2004), պատմաբան: Պատմագիտ. դ-ր, (1972), պրոֆ. (1973): Վահան *Մելիքյանի* հայրը: Աշխ-ները (հայ. և ռուս.) վերաբերում են Հայաստանի և Այսրկովկասի հեղ. շարժումների, քաղ. կուս-յունների, հայ ժողղ-ի քաղ. պատմության (XIX–XX դդ.) խնդիրներին:

ՄԵԼԻՔՅԱՆ Հովիկ Մամիկոնի (1902–1953), գրող, գրականագետ, խմբ.: Պրոֆ. (1937): 1937–39-ին՝ «Գրական թերթ», 1944–46-ին՝ «Սովետական գրականություն» պարբ-ների խմբ.: 1938–41-ին՝ ԱրմՖԱՆ-ի գրկ-յան և լեզվի ինստ-ի տնօրեն: Հեղինակ է «Զղջում» (1928), «Պատմվածքներ» (1930), «Ճակատում» (1931), «Աղջիկը մորու փունջը ձեռքին» (1936) և այլ պատմվածքների ժող-ների:

ՄԵԼԻՔՅԱՆ Հրաչյա Սպիրիդոնի (1913–1942), կոմպոզիտոր: Սպիրիդոն *Մելիքյանի* որդին: Ստեղծագործությունը սերտորեն կապված է ժող. երաժշտությանը: Հեղինակ է «Սասունցի Դավիթ» սիմֆ. պոեմի, նաև լար. կվարտետի, դաշնամուր. պրելյուդների, երգերի և այլ երկերի:

ՄԵԼԻՔՅԱՆ Հրաչյա Սուրենի (1947–2005), կոմպոզիտոր: Հեղինակ է «Աբսուրդի վերջը կամ Օտար արյուն» օպերայի, «Ամբոխները խելագարված», «Ձոն սիրուն» վոկալսիմֆ. պոեմների, նաև կոնցերտների, փող. կվարտետի (1978), կվինտետների (1984, 1988), 4 լար. կվարտետների, տրիոների, սոնատների, անսամբլների, «12 նազանքներ»՝ ֆագոտի, 12 պիեսի՝ թավջութակի և դաշնամուրի, 3 կոնցերտի՝ թավջութակի և նվագախմբի համար, կինոերաժշտության: Համամիութ. մրցույթի (1969, Մոսկվա) դափնեկիր, ՀՀ Պետ. մրց. (2005):

ՄԵԼԻՔՅԱՆ Մելիք Գալուստի, **Դեդուշկա** (1868–1918), հեղ. գործիչ, հրապարակախոս: 1902-ին՝ «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» հիմնադիրներից, մասնակցել է Բաքվի «Նինա» ընդհատակյա տպարանի ստեղծմանը: Բաքվի կոմունայի (1918) ժամանակ ընտրվել է Բաքվի խորհրդի պատգմ.: Սպանվել է թուրք մուսավաթականների ձեռքով:

ՄԵԼԻՔՅԱՆ Մեհենդակ Արտաշեսի (1919–1993), փիլ.: Փիլ. գիտ. դ-ր, պրոֆ. (1969): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (1981): Աշխ-ները վերաբերում են սոցիալ-էթնիկ. հանրույթների տեսության խնդիրներին:

ԽՍՀՄ «Կարմիր աստղ» շքանշան (2):

ՄԵԼԻՔՅԱՆ Նատալյա Մելիքի (1906–1989), բուսաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1964), պրոֆ. (1966): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1967): Աշխ-ները վերաբերում են կարտոֆիլի պալարագոյացման հորմոն. կարգավորմանը, կարտոֆիլի լուսասինթեզի, բերքատվության և անատոմիայի վրա արտաքին ազդեցություն կարգավորիչների ազդեցությանը:

ՄԵԼԻՔՅԱՆ Ներսես Ռոբերտի (ծ. 1957), գեղանկարիչ: Հեղինակ է նատյուրմորտների («Նատյուրմորտ տանձով», 2015, «Նատյուրմորտ նռնով», 2011, ևն), բնանկարների («Ծաղկած բալենիներ», «Ոսկե ծիրանենի», շարք, 2011–16, ևն), դիմանկարների («Անդրանիկ Օզանյան», 2016, «Տիրամայր», 2013, ևն), պաստրակտ կոմպոզիցիաների («Հոկտեմբերի 27», 2016, հորինվածքների շարք, 1999–ից, ևն) և այլ գործերի:

ՄԵԼԻՔՅԱՆ Ռոմանոս Հովակիմի (1883–1935), կոմպոզիտոր, խմբավար: Հայկ. դաս. ռոմանսի, «Երաժշտական լիգա»-ի, Երևանի երաժշտ. ստուդիայի (1921), Կոմիտասի անվ. պետ. կոնսերվատորիայի (1923) հիմնադիրներից: 1920-ական թթ-ին՝ Հայաստանում ինքնագործ երգչախմբերի կազմակերպիչ և ղեկ.: Հայտնի են Մ-ի «Աշնան տողեր» (1908–14), «Զմրուխտի» (1916–18, հրտ.՝ 1928), «Զառվառ» (1922, հրտ.՝ 1949), «Նոր օրերի երգեր» վոկալ շարքերը: Ստեղծել է ազգ. երաժշտության ինչյուն. վառ ու գունեղ երանգապնակ:

ՄԵԼԻՔՅԱՆ Սպիրիդոն Ավետիսի (1880–1933), երաժշտագետ, կոմպոզիտոր, խմբավար: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1933): Հրաչյա *Մելիքյանի* հայրը: *Հայոց երգչախմբային ընկերության* հիմնադիրը (1917, Թիֆլիս): Հրատարակել է երաժշտ. դասագրքեր, մշակել ժող. երգեր («Թխկոնդա», «Պիլիբի», «Ծամթել» ևն): Հեղինակ է «Ուրվագիծ հայ երաժշտության պատմության» (1935) և այլ աշխ-ների: Հավաքել և հրատարակել է «Շիրակի երգեր» (1917), «Հայ ժողովրդական երգեր ու պարեր» (հ. 1–2, 1949) ժող-ների: Կազմել ու հրատարակել է 1904-ին Կոմիտասի հանձնարարությամբ նրա բնագրերից արտագրած ժող. երգերը («Ազգագրական ժողովածու», 1931): Մ-ի առաջաբանով լույս է տեսել Գ. Գարդաշյանի գրառած «Վանա ժողովրդական երգերը» (պր. 1–2, 1927) ժող-ր:

ՄԵԼԻՔՅԱՆ Վազգեն Շավարշի (ծ. 1956), ինքնաշխատ համակարգերի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (2006), պրոֆ. (2006): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2014): «Սինովիսիս-Արմենիա» ՓԲԸ ուս. դեպարտամենտի տնօրեն (2004-ից): Աշխ-ները վերաբերում են մաթ. միկրոէլեկտրոն. սխեմաների ինքնաշխատ մոդելավորմանը, արագագործ և ցածր

հզորության գերմեծ ինտեգրալ սխեմաների ինքնաշխատ նախագծմանը և օպտիմալացմանը:

ՌԻ, Ուկրաինայի, Բելառուսի կիրառ. ռադիոէլեկտրոնիկայի ԳԱ-ների անդամ:

ՄԵԼԻՔՅԱՆ Վահան Հենրիկի (ծ. 1961), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (2012): Հենրիկ ***Մելիքյանի*** որդին: Աշխ-ները վերաբերում են Հայաստանի և Այսրկովկասի (մասնավորապես՝ ***Անդրկովկասի կոմիսարիատի*** գործունեությանը) 1914–1921-ի ժամանակաշրջանի պատմության հիմնահարցերին (ազգ-ազատագր. շարժում, կուս-յուններ, Հայկ. հարց ևն): «Արևմտահայերի ազգ. համագումար» միջազգ. կազմ-յան Ազգ. խորհրդի անդամ (2011):

ՄԵԼԻՔՅԱՆ Վարյա (Վարվառե) Գևորգի (1868–1928), դերասանուհի: 1881-ից մասնակցել է Գևորգ Չմշկյանի և Հովհաննես Տեր-Գրիգորյանի խմբերի ներկայացումներին: 1884–90-ին՝ Թիֆլիսի վրաց. թատրոնի, 1891–97-ին՝ Գևորգ ***Պետրոսյանի*** հայկ. դերասան. խմբի, 1897–1901-ին՝ Բաքվի հայկ. թատրոնի դերասանուհի (Կեկել, Նատալյա՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», «Խաթաբալա», Շպպանիկ՝ Շիրվանզադեի «Նամուս»):

ՄԵԼԻՔՅԱՆՑ, Մելիքով, Պողոս Մովսեսի (1777–1848), ռուս. բանակի գեն-մայոր (1819): Մասնակցել է ռուս-ավստրո-ֆրանս. (1805), ռուս-պրուսա-ֆրանս. (1806–07), ռուս-շվեդ. (1808–09) և այլ պատերազմների: 1816–23-ին եղել է Բաքվի ամրոցի պարետը: Մ-ի նախաձեռնությամբ և նյութ. օժանդակությամբ է հիմնադրվել Մոսկվայի հայոց «Գասպարյան աղքատանոցը» (1841): Պարգևատրվել է ոսկե սրով:

ՄԵԼԻՔ-ՆԱՋԱՐՅԱՆ (Իզմիրյան) Սոփիա-Նվարդ (1843–1904), դերասանուհի: Արևելահայ պրոֆեսիոնալ թատրոնի հիմնադիրներից: 1863–71-ին խաղացել է Թիֆլիսում (Պորցիա՝ Վ. Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը», Նատալյա, Էփեմիա, Սալոմե՝ Գ. Սունդուկյանի «Խաթաբալա», «Պեպո», «Էլի մեկ զոհ», վերջին երեքը հեղինակը գրել է Մ-Ն-ի համար):

ՄԵԼԻՔՇԱՀՅԱՆ Պողոս, **Ֆիզիկա Պողոս** (1788–1855), փիլ., մանկավարժ, հաս. գործիչ: «Տրամաբանություն» (հ. 1, հրտ.՝ 1876) աշխ-յան մեջ փիլ-յան հիմն. հարցը լուծել է ըստ դեիզմի: Ըստ Մ-ի՝ աշխարհն առաջացել է փոշենման նախանյութից: Փորձել է դասակարգել շարժման տեսակները («տեղական» շարժում, «գոյացման» շարժում): Ըստ Մ-ի՝ յուրաքանչյուր փիլ. համակարգ իմացաբանորեն կապված է հոգեկանի և մարմնականի հարաբերակցության հետ:

ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Կոստանդին Կարապետի, **Տմբլաչի Խաչան** (1857–1940), գրող: ՀԽՍՀ վաստ. գյուղատնտես (1924): Սողոմոն ***Մելիք-Շահնազարյանի*** եղբայրը: Հեղինակ է «Ուղեցոյց գործնական գինեգործութեան» (1885), «Ծխախոտի մշակութիւնը» (1925) և այլ աշխ-ների, «Զուռնայ-Տմբլայ» (1901) և այլ ֆելիետոնների ժող-ների, «Ղըլըցէ կնանոց պրնըփեշակը» (1882) և այլ երգիծ. գործերի:

ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Սողոմոն Կարապետի (1862–1942), գյուղագիր: Կոստանդին ***Մելիք-Շահնազարյանի*** եղբայրը: Հեղինակ է «Հայ գիւղացու սեւ օրը» (1890), «Գործակատար Սարտիրոսը» (1913) վիպակների:

ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆՆԵՐ, Շահնազարյաններ, մելիք. տոհմ Արցախում՝ XVI դ-ի վերջին և XIX դ-ի սկզբին: Սերել են ***Դոփյանների*** իշխան. տոհմից: 1-ին ճյուղի տիրույթներն էին Սոդք գվո-ը՝ Մեծ Մազրա մելիքանիստ ավանով, և Գեղարքունիք գվո-ի մի մասը: Մելիք. տիտղոսին ժառանգաբար տիրելու իրավունք է ձեռք բերել Շահնազար Ա Մեծի (1580-ական թթ–1606) օրոք, որի մելիք. իրավունքներն օրինականացվել են շահ Աբբաս I-ի հրամանով: Մ-Շ-ի Վարանդայի ճյուղի տիրույթները՝ Ավետարանոց իշխանանիստով, տարածվել են պատմ. Բերդաձոր գվո-ից մինչև Սուխանք գվո-ը: Արցախում գերագահություն նվաճելու նպատակով Շահնազար Բ-ն դաշնակցել է վաչկատուն սարըջալի ցեղի առաջնորդ Փանահի հետ, 1750-ական թթ-ին նրան հանձնել Շոշի բերդը: Հավանաբար XVII դ-ում Մ-Շ-ի մի ճյուղն էլ հաստատվել է Հս. Արցախի Ոսկանապատ գ-ում:

ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆՑ Մանուչար, XVIII դ-ի զորավար, Գեղարքունիքի մելիք՝ 1730–40-ական թթ-ին: Հաջորդել է հորը՝ Մելիքջան ***Մելիք-Շահնազարյանցին***: Վայելել է Նադիր շահի վստահությունը, իր զորքերով մասնակցել Հնդկաստան կատարած նրա արշավանքներին: Սպանվել է:

ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆՑ Մելիքջան, XVIII դ-ի զորավար, Գեղարքունիքի մելիք՝ 1720–30-ական թթ-ին: Մանուչար ***Մելիք-Շահնազարյանցի*** հայրը: Պարսկ. բանակի կազմում իր զորքով կռվել է Այսրկովկաս ներխուժած օսմ. թուրքերի դեմ: Ըմբոստացել է Երևանի բեկլարբեկի դեմ և մահապատժի ենթարկվել:

ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՈՎ Ալեքսանդր Միքայելի (1920–1986), տեղեկատվ. չափիչ տեխնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1960), պրոֆ. (1960): ԽՍՀՄ վաստ. գյուտարար (1971): Աշխ-ները վերաբերում են տեղեկատվ. չափիչ սարքավորումների մշակման տես. և գործն. հարցերին: ԽՍՀՄ Պետ. (1969), ՌԳԱ Ի. Մ. Գուբկինի անվ. (1979) մրց-ներ:

ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՈՎ Անդրեյ Պավելի (Մելիք-Շահնազարյան Անդրեաս Պողոսի, 1887–1937), ռուս. բանակի գեն-լեյտ., դիվիզիայի հրամ. (1935): Մասնակցել է ԱՀՊ-ին, 1917–18-ին ծառայել է ***Հայկական կորպուսում***, 1920-ին՝ Ալեքսանդրապոլի կայազորի 1-ին հեծելազոր. գնդի, 1921–31-ին՝ Հայկ. հրաձգ. դիվիզիայի հրամ., ապա՝ 16-րդ հրաձգ. կորպուսի հրամ. (Բելոռուս. ՋՕ): Բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել (1958):

Սր Գեորգիի 4-րդ աստիճանի, ՀԽՍՀ «Կարմիր դրոշի» (1921, 1928) շքանշաններ:

ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՈՎ Բոգդան Բագրատի (1926–2004), կիբեռնետիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1986): Աշխ-ները վերաբերում են սոցիալ-տնտ. համակարգերի կառավարման հարցերին: Զգալի ավանդ ունի ՀՀ-ում հաշվող. տեխնիկայի արմատավորման և զարգացման գործում:

ՄԵԼԻՔՈՎ Արիֆ Ջհանգիր օղլի (ծ. 1933), ադրբեջանցի կոմպոզիտոր: Ադրբ. ԽՍՀ (1965), ԽՍՀՄ (1986) ժող. արտիստ: Հեղինակ է «Ասք սիրո մասին» (1961), «Պոեմ երկու սրտերի» (1982) բալետների, նաև վոկալ-սիմֆ. գործերի, սիմֆոնիայի և այլ գործերի: Ադրբ. ԽՍՀ Պետ. մրց. (1986):

ՄԵԼԻՔՈՎ (Մելիքիշվիլի) Պյոտր Գրիգորի (1850–1927), վրացի քիմիկոս-օրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1927): Թբիլիսիի համալսարանի հիմնադիր-ռեկտոր (1918): Հայտնաբերել է գլիցիդային թթուները, ուսումնասիրել գերօքսիդներն ու վերօքսիդները:

ՄԵԼԻՔՍԵԹ ԿԱԶՄՈՂ, XVI դ-ի քանդակագարդող վարպետ, խաչքարեր կազմող: Ստեղծագործել է հիմնականում Գեղարքունիքում: Նրա ստորագրությամբ խաչքարեր կան Կարմիրգյուղ (1541, 1567, Սբ Աստվածածին, 1546, 1549, Սբ Գևորգ), Ծաղկունք (1553, Սբ Հարություն), Նորատուս (1555, 1595, անթվակիր, Սբ Աստվածածին), Բջնի (1580, անթվակիր, Սբ Աստվածածին) գ-երում, Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ, Սբ Կարապետ), որոնք տեղադրված են եկեղեցիների պատերին կամ շրջակայքում:

ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ Լևոն (Լեոն) Մելիքսեթի (1890–1963), պատմաբան, բանասեր, մատենագետ, հնագետ: ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1945): 1922-ից աշխատել է Թիֆլիսի համալսարանի հայկ. բանասիրության ամբիոնում: Հիմն. աշխ-ներից են «Վարդապետք Հայոց Հյուսիսային Կողմանց և նրանց ինքնությունը» (վրաց., 1928), «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» (հ. 1–3, 1934–55), «Մեգալիթյան մշակույթը Վրաստանում» (վրաց., 1938) ևն: Ուսումնասիրել է Թբիլիսիի շրջակայքի հայկ. հնությունները, պատմաճարտ. հուշարձանները:

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ Առնոլդ Լևոնի (ծ. 1949), նկարիչ: Հեղինակ է գեղանկարչ., գրաֆիկ. գործերի («Ագրեսիա», «Շուշի», երկուսն էլ՝ 1995), քանդակների («Մարդը թիկունքով», 1999, «Հաղթանակ», 2000, ևն):

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ Արմեն Վասիլի (ծ. 1951), ռեժ.: Պրոֆ. (2005): ՀՀ արվ. վաստ. գործիչ (2012): 1992–95-ին՝ Երևանի մանկ. երաժշտ. թատրոնի գլխ. ռեժ., 1996-ին՝ գեղ. ղեկ., 1997–2006 և 2014–16-ին՝ ԵԿԵԹ հիմնադիր-գեղ. ղեկ.: Բեմադրել է Կ. Օրֆի «Բեռնաուերի դուստրը» (1997), Վ. Ածեմյանի «Կիկոս» (1998, օպերա), Լ. Վերեի «Կատուներ» (2000), «Բրոդվեյ-Բրոդվեյ» (2003), Արամ Սաթյանի «Լիլիթ» (2005, ռոք-օպերա) և այլ գործեր:

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ Բորիս Սանուկի (1928–1992), երկրաբան: Երկրբ-հնքբ. գիտ. դ-ր (1989): 1984–92-ին՝ Հայկ. հանքաբան. ընկ-յան նախագահ: Աշխ-ները վերաբերում են ՀՀ տարածքի մագմայական խոշոր համալիրների (Մեղրու պլուտոն, Թեժլեռի հրաբխաներժայթուք. զանգված, ՀՀ կենտր. մասի գրանիտոիդ. ներժայթուքներ), ապարաբանության, հանքաբանության, երկրաքիմիայի, իզոտոպ. երկրբ-յան և մետաղածնության հարցերին: ՀՀ Պետ. մրց. (1976):

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ Խաչիկ Հմայակի (1920–1974), հրետանավոր, Փառքի 3 աստիճանի շքանշանակիր (1943, 1944, 1945): Աչքի է ընկել Ստալինգրադի, Կուրսկի ճակատամարտերում, Մերձբալթիկայում (Մեմել, Նևել), ապա՝ Քյոնիգսբերգի համար մղված մարտերում:

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ Հովիկ Ուխտանեսի (1931–1997), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1986), պրոֆ. (1989): Աշխ-ները վերաբերում են Հայրենիք-Սփյուռք առնչություններին, հայրենադարձությանը, հայ ժողդ-ի մասնակցությանը ՀՄՊ-ին:

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ Ռաֆայել Տիգրանի (1935–2003), ֆիզկուլտուրայի և սպորտի

բնագավառի գիտնական: Մանկավարժ. գիտ. դ–ր (2001), պրոֆ. (1992): ՀՀ ս. վ. մ. (1970), ՀՀ ֆիզկուլտուրայի և սպորտի վաստ. աշխատող (2000): Մշակել է Հայաստանի լեռն. շրջանների դպրոցական-ների ֆիզ. զարգացման և պատրաստվածության գիտ. տեսությունը:

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ Սամվել Գրիգորի (1907–1992), անասնաբույժ: Անասնաբուժ. գիտ. դ–ր (1962), պրոֆ. (1964): Աշխ-ները վերաբերում են գղտ. կենդանիների վիրաբուժ. հիվանդությունների կանխարգելման և բուժման խնդիրներին: 1935–40-ին՝ Ա. Վալլերի (Լենինգրադ) հետ մշակել է ձիերի աղիք. քարերի հեռացման վիրահատ. նոր եղանակ, ստեղծել է խեչ-ների նախաստամոքսի վնասվածքների կանխման և բուժման սարքեր (մագնիս. զոնդ և օղակ):

ԽՍՀՄ Կարմիր դրոշի, ՀՄՊ 1-ին աստիճանի, Կարմիր աստղի (3) շքանշաններ:

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ Սարգիս Ալեքսանդրի (1899–1980), թատերագետ, գրականագետ: Արվեստագիտ. դ–ր (1971): ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1956): 1935-ին հիմնադրել է Երևանի թատեր. թանգարանը, 1953-ից աշխատել է ԳԱԹ-ում (1963–80-ին՝ տնօրեն): Հեղինակ է «Քիթ Մաթոն» (1925) վիպակի, «Մեր թատրոնի ուղին» (ռուս., 1940), «Հովհաննես Աբելյան» (1954), «Ուրվագծեր սովետահայ թատրոնի պատմության» (1960), «Շեքսպիրը և մերոնք» (1974, ժող.) և այլ աշխ-ների: Կազմել և հրատարակել է Գ. Զմշկյանի «Իմ հիշատակարանը» (1953):

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան:

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ Փիրուզա Պետրոսի (ծ. 1955), լրագրող, խմբ.: 2007–08-ին՝ ***«Իրավունք»*** թերթի գլխ. խմբ., 2008-ից՝ ***«Իրավունք ու ֆակտ»*** թերթի հիմնադիր-խմբ.:

ՄԵԼԻՔ-ՍՏԵՓԱՆՅԱՆ Արամ Մաթևոսի (1908–1996), կինոտեխնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1965), պրոֆ. (1963): Աշխ-ները վերաբերում են ժապավենաձիգ մեխանիզմների տեսությանը, ինչյունային սարքավորումների կատարելագործմանն ու զարգացմանը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

ՄԵԼԻՔ-ՎՐԹԱՆԵՍՅԱՆ Կոստանդին Եփրեմի (1899–1970), երաժշտագետ, հաս. գործիչ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1961): 1936–68-ին՝ կոնսերվատորիային կից շնորհալի երեխաների խմբի, 1940–41-ին, միաժամանակ՝ Հայֆիլհարմոնիայի գեղ. ղեկ.: Հեղինակ է «Արմենն Տիգրանյան» (ռուս., 1939), «Պյոտր Չայկովսկի» (1940), «Երաժշտական բացատրական բառարան» (համահեղ., 1989) աշխ-ների:

ՄԵԼԻՔ-ՎՐԹԱՆԵՍՅԱՆ Օլգա Գարեգինի (1926–1998), ռեժ.: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1977): Զավեն ***Տափինցյանի*** կինը: 1956-ից՝ հայկ. հեռուստաստուդիայի ռեժ. (1957–73-ին՝ մանկ., 1973–78-ին՝ դրամատիկ. հաղորդումների խմբագրություններ գլխ. ռեժ.): Բեմադրել է Չ. Այթմատովի «Բարդի իմ, կանաչ գլխաշորով» (1973), Գ. Խուգաևի «Անդրոն ու Սանդրոն» (1979), Է. Դե Ֆիլիպոյի «Ցիլինդր» (1980), Մ. Գալշոյանի «Մամփրե արքա» (1986), նաև «Կանչը», «Ծովասարի Օհանը», «Մենավոր ծառը» եռերգությունը (1987): Հեղինակ է «Սովետահայ ռեժիսուրայի կազմավորման պատմությունից» (1966) աշխ-յան:

ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆ, XVI–XVIII դդ-ում ավատատիր. իշխանության վարչաձև Արլ. Հայաստանում: XVII դ-ի վերջից Արցախի Մ-ները Ռուսաստանի օգնությամբ փորձել են թոթափել իրան. լուծը: 1724–35-ին պայքարել են Այսրկովկաս ներխուժած թուրք. զորքերի դեմ՝ ինքնաբերաբար դաշնակցելով Իրանին: ***Նադիր շահը*** ճանաչել է Արցախի Մ-ների ինքնիշխանությունը և հաստատել նրանց դաշնակցային ինքնավարությունը (տես ***Խամսայի մելիքություններ***):

ՄԵԼԻՔ-ՓԱՇԱԵՎ (Մելիք-Փաշայան) Ալեքսանդր Շամիլի (1905–1964), դիրիժոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1951): 1921–31-ին (ընդհատումներով)՝ Թիֆլիսի ՕԲԹ-ի կոնցերտմայստեր, ապա՝ դիրիժոր, 1931–53-ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի դիրիժոր, 1953–62-ին՝ գլխ. դիրիժոր: 1924-ին Լենինականի օպերա-օպերետ. խմբում ղեկավարել է Շ. Գունոյի «Ֆաուստ», Ժ. Բիզեի «Կարմեն», Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերաները: Հեղինակ է «Տասներկուերորդ գիշեր» (ըստ Վ. Շեքսպիրի) օպերայի, նաև սիմֆոնիայի, ռոմանսների: Մոսկվայում կայացած հայկ. 1-ին տասնօրյակի (1939) երաժշտ. ղեկ.:

ԽՍՀՄ Պետ. (1942, 1943), Մեծ (Ֆրանսիա, 1953, 1962), Ամերիկայի արվ-ների ակադ-ի (1964) մրց-ներ:

ՄԵԼԻՔ-ՓԱՇԱԵՎ (Մելիք-Փաշայան) Հովհաննես Ներսեսի (1889–1935), ճարտարագետ-էլեկտրիկ: Ներսես ***Մելիք-Փաշաևի*** հայրը: Մ-Փ-ի նախագծերով կառուցվել են ԽՍՀՄ առաջին ջրէկները (Զեմո-Ավճալայի, Ռիոնի, Երևանի, Լենինականի, Ստեփանակերտի ևն): Նրա ղեկավարությամբ մշակվել է Չիրչիկ գետի (Ուզբեկստան) ջրէկների կասկադի նախագիծը, Հայաստանի էլեկտրիֆիկացման օրինակելի պլանը (1921–22):

ՄԵԼԻՔ-ՓԱՇԱԵՎ Ներսես Հովհաննեսի (1925–1989), ավիացիոն և հրթիռ. շարժիչների տեսության բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1965), պրոֆ. (1967): Հովհաննես ***Մելիք-Փաշաևի*** որդին: Աշխ-ները վերաբերում են հրթիռ. վառելիքի բաղադրիչների ջերմաֆիզ. հատկություններին, հրթիռ. շարժիչների հովացման մեթոդներին:

ԽՍՀՄ ՆԽ Ն. Ե. Ժուկովսկու անվ. մրց. և մեդալ (1965):

ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ Արմեն Էդուարդի (ծ. 1973), հոգեբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (2007), պրոֆ. (2012): 2003–04-ին՝ ՀՀ ԱՆ «Նորք» հոգեկան առողջության կենտրոնի տնօրեն, 2007-ից՝ Նորքի հոգեբուժ. կլինիկայի ղեկ.: Աշխ-ները վերաբերում են հոգեբուժության բնագավառում կլինիկոէպիդեմիոլոգիական խնդիրներին և խարանին (ստիգմա):

Եվրոպ. նեյրոհոգեբուժ. կոլեգիայի դեսպանը ՀՀ-ում (2011-ից):

ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ Սարիետա Ալբերտի (1936–2016), հոգեբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1974), պրոֆ. (1980): ՀՀ ԲԳԱ ակադ. (1997): Աշխ-ները վերաբերում են գիտակցության խանգարումների, շիզոֆրենային արատի, աթերոսկլերոզի, հոգեկան հիվանդությունների ժամանակ հոգեկան գործունեության գիտակց. և ոչ գիտակց. մակարդակներում փոփոխությունների հարցերին: ՀԽՍՀ շախմատի չեմպիոն (1949–53): Հոգեբուժության մեջ բարեփոխումների ժնևյան նախաձեռնող խմբի անդամ (1996-ից):

ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ Կարապետ Աղաբեկի (1893–1970), բանասեր, հայագետ-արևելագետ, թարգմանիչ: Պրոֆ. (1935): ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1965): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1962): Հեղինակ է «Միթրա-Միհիրը «Մասնա ծռերի» մեջ» (1946), «Տիրան-Տրդատի վեպը, ըստ Փավստոս Բուզանդի» (1947), «Ագաթանգեղոսի պատմությունն ու նրա ժողովրդական՝ բանավոր սկզբնաղբյուրները» (1968) աշխ-ների, «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից» (1957), «Կիրակոս Գանձակեցի. «Պատմություն Հայոց»» (1961), «Կորյունը և նրա «Վարք Մաշտոցին»» (ռուս., 1962), «Պատմութիւն Փարէզի եւ Վէննայի» (1966) մենագրությունների: Մանուկ ***Աբեղյանի*** հետ իրականացրել է «Մասնա ծռեր»-ի (հ. 1–2, 1936) գիտ. հրտ-յունը: Գրառել է «Մասնա ծռեր»-ի 8 նոր պատումներ և թարգմանել ռուս. (հրտ.՝ 2008): Արևելագիտ-հայագիտ. արժեք ունի նրա «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահնամեում» և հայ մատենագրության մեջ» («Ֆիրդուսի», ժող., 1934) ուսումնասիրությունը: 1937-ին անհիմն բռնադատվել է, 1942-ին՝ արդարացվել:

ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ Ռաֆայել Գեղամի (1939–2014), կենսաօրգ. քիմիկոս: Քիմ. գիտ. դ–ր (1991): Աշխ-ները վերաբերում են հակաուռուցք. միացությունների սինթեզին, բնական հակաբիոտիկների կառուցվածքի վերափոխմանն ու բնական հակաուռուցք. միջոցների որոնմանը: ՌԲԳԱ (1997-ից), Բնության և հաս-յան մասին գիտ-յունների միջազգ. ակադ-ի (1997-ից) ՀՄ-ի հիմնադիր, Գիտ. հայտնագործությունների հեղինակների միջազգ. ակադ-ի (1998-ից) նախագահ: Քեմբրիջի կենսագր. կենտրոնի «Տարվա մարդ» (1997, 1998):

Կիտասատոյի համալսարանի (1986), Տոկիոյի ուռուցքաբան. գիտ. կենտրոնի (1986), ՌԳԱ Ա. Ս. Պոպովի անվ. (1998) արծաթե, Պ. Լ. Կապիցայի անվ. (2002) մեդալներ, «Գիտության ասպետ» (1998), Պետրոս Մեծի (2004), ՌՈՒԵ Սբ Սերաֆիմ Սարովսկու (2004), «Սբ Ստանիսլավ» (Լեհաստան, 1998) շքանշաններ:

ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ Գարսադան Բագրատի (1921–2009), նավ. սարքավորումների բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1989), պրոֆ. (1991): 1968-ից՝ Սոսկվայի «Ագաթ» ԳԱՄ-ի, 1976–93-ին՝ Երևանի «Բազալտ» սարքաշին. գործարանի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են նրբաթել հաղորդալարերի մոնտաժի տեխնոլոգիային և նավ. սարքավորումների նախագծմանն ու ստեղծմանը:

«ՄԵԼԼԱԹ ԲԱՆԿ», ոչ պետ. ՓԲԸ ՀՀ-ում: Հիմնադրվել է 1992-ին՝ որպես ԻՀՀ «Մելլաթ» բանկի Երևանի մասնաճյուղ: Գործունեությունն սկսել է 1995-ին: Կանոնադր. կապիտալը 2016-ին կազմել է 32,1 մլրդ դրամ (միակ բաժնետերն ԻՀՀ «Մելլաթ» բանկն է): Կենտրոնատեղին՝ Երևանում:

ՄԵԼԼԵՐ (Maller, Muller) Հերման Ժոզեֆ (1890–1967), ամերիկացի գենետիկ: Շառագայթ. գենետիկայի հիմնադիրներից: ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1933): 1933–37-ին աշխատել է ԽՍՀՄ-ում: Փորձարար. եղանակով բացահայտել է (1927) ռենտգեն. ճառագայթների ազդեցությամբ արհեստ. մուտացիաների առաջացումը: Մասնակցել է ժառանգականության քրոմոսոմ. տեսության մշակմանը: Նորելյան մրց. (1946):

ՄԵԼԼՈ (Mello) Կրեյգ Կամերոն (ծ. 1960), ամերիկացի կենսաբան-կենսաքիմիկոս: Հայտնագործել է (1998, Է. ***Ֆայրի*** հետ) ՌՆԹ-ինտերֆերենցիայի երևույթը, որը

հնարավորություն է տվել նպատակաուղղված ճնշել որոշակի գեների դրսևորումը (էքսպրեսիան):

Նոբելյան մրց. (2006, Է. Ֆայրի հետ):

ՄԵԼՅԱՆ Բալաբեկ Գրիգորի (ծ. 1926), գրադարանագետ, մատենագետ, բանասեր: Բանասիր. գիտ. թեկնածու (1985), պրոֆ. (1986): Հեղինակ է «Մանկական գրականության մատենագիտություն» (1982), «Գիտա-ճանաչողական մանկական գրականության մատենագիտություն» (հ. 1, 2, 1985, 1988), «Տավուշյան ավանդապատումներ» (2009), «Գրքագիտություն» (2012) և այլ աշխ-ների, նաև բանաստեղծությունների ժող-ի, հուշագրության, վավերագր. վիպակների ևն:

ՄԵԼՆԻԿՈՎ Նիկոլայ Նիկոլաևիչ (1908–2000), ռուս. քիմիկոս-օրգանիկ: ՌԳԱ թղթ. անդամ (1991, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1979–ից): «Ագրոքիմիա» (ռուս.) ամսագրի գլխ. խմբ. (1981–ից): Աշխ-ները վերաբերում են պեստիցիդների քիմիային և տեխնոլոգիային: ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ՄԵԼՆԻԿՈՎ Նիկոլայ Պրոկոֆևիչ (1908–1982), ռուս ճարտարապետ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1979): Աշխ-ները վերաբերում են մետաղ. կառուցվածքների տեսությանը, հատուկ կառույցների և շինությունների (արդ. շենքեր, դոմենյան վառարաններ, միջուկ. ռեակտորներ) հաշվարկման մեթոդներին:

ԽՍՀՄ Պետ. (1949, 1950, 1951, 1969), Լենինյան (1975) մրց-ներ:

ՄԵԼՆԻԿՈՎ Վիտալի Վյաչեսլավովիչ (ծ. 1928), ռուս. կինոռեժ.: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1977), ժող. արտիստ (1987): 1952–ից նկարահանել է վավերագր. ֆիլմեր, 1964–ից՝ ընարադրամատիկ. կատակերգություններ («Չուկոտկայի պետը», 1967, «Բարև և մնաս բարով», 1973, «Չիչա», 1991, ևն): Էկրանավորումներից են՝ «Ամուսնություն» (ըստ Ն. Վ. Գոգոլի, 1978), Ա. Վ. Վամպիլովի պիեսների հեռուստատարբերակները («Ավագ որդին», 1975, «Արձակուրդ սեպտեմբերին»՝ ըստ Ա. Վ. Վամպիլովի «Բադադոս» պիեսի, 1979), ինչպես նաև «Խեղճ ու կրակ Պավելը» (2003), «Ծեծի՛ր թշնամուն» ագիտբրիգադը» (2008):

ՄԵԼՈ... (հուն.՝ melos – երգ, մեղեդի), բարդ բառերի մաս. ցույց է տալիս երաժշտությանը, երգեցողությանը վերաբերելը (օր.՝ ***մելոդրամա***, ***մելոման***):

ՄԵԼՈԴՐԱՄԱ (< ***մելո...*** և հուն.՝ drama – գործողություն), 1. դրամատիկ. ժանր, սուր ինտրիգով, բարու և չարի կտրուկ հակադրությամբ, չափազանցված հուզականությամբ, խրատ-ուսուցող. միտումներով պիես: Ձևավորվել է Ֆրանսիայում 1790-ական թթ-ի վերջին, զարգացել 1830–40-ական թթ-ին: 2. Երաժշտադրամատիկ. ստեղծագործություն, որտեղ երկխոսություններն ու մենախոսությունները փոխարինվում են երաժշտությամբ կամ ուղեկցվում են նրանով: Առաջացել է XVIII դ-ի 2-րդ կեսին:

ՄԵԼՈՅԱՆ Ֆելիքս Հակոբի (1940–2017), գրականագետ, խմբ.: 1979–88-ին՝ ***«Գրական թերթ»***, 2001-ից՝ ***«Նորք»*** պարբ-ների գլխ. խմբ.: Հեղինակ է «Ընթացք» (2003) հոդվածների ժող-ի: Հրտ-յան է պատրաստել Հրանտ ***Մաթևոսյանի*** անտիպ գործերը («Հատընտիր», հ. 1–2, 2005): Թարգմանություններ է արել ռուս-ից:

ՀԳՄ՝Ն. Աղբալյանի (2003), Հ. Մաթևոսյանի (2010) անվ. մրց-ներ:

ՄԵԼՈՆՆԵՐ (Mellon), ԱՄՆ ընտանեկան ֆին. խումբ: Ձևավորվել է XIX դ-ի վերջին: ԱՄՆ 2 այլ հարուստ ընտանիքների (Փիթկերնների և Հեյնցերի), ինչպես նաև «Ֆյորթ Բոսթոն Քորփորեյշն» ներդրում. բանկի հետ վերահսկում են «Ալյումինում Քոմփանի օֆ Ամերիկա», «Գալֆ Օյլ», «Վեստինգհաուզ Էլեքթրիք» և այլ կորպորացիաներ: Վարկաֆին. կենտրոնը՝ «Մելլոն Նեյշընըլ Բանկ Թրասթ»:

ՄԵԼՈՍ (հուն.՝ melos), եղանակ, մեղեդի, նեղ իմաստով՝ երաժշտության երգայնությունն ու մեղեդայնությունն ընդհանրացնող հասկացություն Հին Հունաստանում:

ՄԵԼՈՐԻ (Malory) Թոմաս (մոտ 1417–1471), անգլիացի գրող: «Արթուրի մահը» (1469, հրտ.՝ 1485) ասպետ. դյուցազներգության մեջ ներկայացրել է ասպետության փլուզումը, արտացոլել 1337–1453-ական թթ-ի Հարյուրամյա, Կարմիր և Սպիտակ վարդերի (1455–85) պատերազմների դարաշրջանը:

ՄԵԼՈՖԱԳՈՋ, ոչխարների ինվազիոն հիվանդություն: Հարուցիչը գեղմնաճանճն է, որն ամրանում է բրդի թելերի վրա և ննվում ոչխարի արյունով: Վարակը տարածվում է հիվանդ ոչխարներից:

ՄԵԼՊՈՄԵՆԵ (հուն.՝ melpo – երգել, պարել), 9 մուսաներից հուն. դից-յան մեջ, ողբերգության հովանավորուհին: ***Զևսի*** և Մնեմոսինեի դուստրը, ***սիրենների*** մայրը: Պատկերվել է բարձրահասակ կնոջ տեսքով, գլխին՝ ժապավեն՝ խաղողի տերևներից հյուսված պսակով, հագին՝ թատեր. թիկնոց, ոտքերին՝ կոտուրններ, մի ձեռքին՝ ողբերգության դիմակ, մյուսին՝ սուր կամ մահակ: Փխր. իմաստով՝ դերասաններին անվանում են «Մելպոմենեի քրմեր»:

ՄԵԼՎԻԼ (Melville) Հերման (1819–1891), ամերիկացի գրող: Ռոմանտիզմի ներկայացուցիչ: «Թայփի» (1846) և «Օմու» (1847) վիպակներում ցույց է տվել բուրժ. քաղաքակրթության կործանարար ազդեցությունը Պոլինեզիայում: Հեղինակ է նաև «Մարդի» (1849) այլաբան., «Մորի Դիք կամ Ճերմակ կետաձուկը» (1851, հայ.՝ 1979) փիլ. վեպերի, «Պատմություններ՝ պատշգամբում» (1856) պատմվածքների, «Թիմոլեոնը» (1891) կրոնափիլ. բանաստեղծությունների ժող-ների և այլ գործերի:

ՄԵԼՎԻԼ (Melville, Գրումբախ) Ժան Պիեռ (1917–1973), ֆրանսիացի կինոռեժ.: Ամերիկ. գանգստեր. կինոյի ազդեցությամբ նկարահանել է գլխավորապես ոստիկան. թեմայով ֆիլմեր («Իրազեկող ոստիկանը», 1963, «Սամուրայ», 1967, «Ստվերների բանակը», 1969, «Ոստիկանը», 1972, ևն): Էկրանավորումներից են՝ «Ծովի լռությունը» (ըստ Ժ. Բ. Վերկորի, 1948), «Դժվար երեխաներ» (ըստ Ժ. Կոկտոյի, 1950) ևն:

ՄԵԼՔԱՐՏ (Milkqart, փյունիկ. – քաղաքի արքա), Տիր և Կարթագենե ք-ների գերագույն աստվածս արևմտասեմիտ. դից-յան մեջ, ծովագնացության հովանավորը: Անտիկ շրջանի ավարտին նույնացվել է ***Հերակլեսի*** հետ:

ՄԵԼՔԻՈՐ, ***մելխիոր*** [գերմ.՝ Melchior, աղավաղված ֆրանս.՝ maillechort, համաձուլվածքի գյուտարարներ Մայոյի (Maillot) և Շորիեի (Chorier) անունով], պղնձի (հիմքով) համաձուլվածքների խումբը հիմնականում նիկելի (5–30 %), նաև մանգանի (մոտ 1 %) և երկաթի (մոտ 1 %) հետ: Արծաթասպիտակավուն է, ունի մեծ կոռոզիակայունություն, սառը և տաք վիճակներում լավ մշակվում է ճնշմամբ: Կիրառում են ամանեղեն, մետաղադրամներ, ճշգրիտ մեխանիկայի դետալներ, բժշկ. գործիքներ պատրաստելու համար:

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ, XIV դ-ի գրիչ և մանրանկարիչ: Վասպուրականի մանրանկարչության դպրոցի ներկայացուցիչ: Հայտնի է 1338-ին ընդօրինակած Ավետարանով (Մտնդ., ձեռ. № 4813): Մանրանկարներին («Ծնունդ», «Հարություն» ևն) հատուկ են ինքնատիպ հորինվածքները, մաքուր գույների հարաբերումները, արտահայտիչ գծանկարը:

ՄԵԼՔԻՍԵԹ ՎԺԱՆԵՑԻ, Ուջանեցի (ծ. թ. անհտ–1631), փիլ., մշակույթի գործիչ: Էջմիածնում դասավանդել է փիլ-յուն, բնագիտ-յուն, տոմարագիտ-յուն: Վեր է հանել անտիկ և հայ փիլ-ների (Արիստոտել, Պորփյուր, Դավիթ Անհաղթ) ուսմունքները, նպաստել է հայ փիլ. մտքի ընդհատված ավանդույթների վերականգնմանը:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Անդրանիկ (Անդրեյ) Խաչիկի (1915–2003), գվարդիայի ավագ: ԽՄ հերոս (1944): 1939–40-ին մասնակցել է Արմ. Բելոռուսիայի, Արմ. Ուկրաինայի ազատագրմանը, Խորհրդա-ֆինն. պատերազմին: Հերոսի կոչման արժանացել է Դնեստրի գետանցման ժամանակ (1944-ի ապրիլ) ցուցաբերած արիության համար:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Աշոտ Աղասու (ծ. 1961), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (2002), պրոֆ. (2004): ՀՀ ԳԱԱ ակադ. (2014, թղթ. անդամ՝ 2006–ից): 2002–ից՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստ-ի տնօրեն: Հեղինակ է «Էրզրումի: Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին» (1994), «Ջավախք. Պատմության ուրվագծեր» (1999), «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» (2003), «Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից. 19-րդ դար–20-րդ դարի սկիզբ» (2005), «Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր (հոդվածների ժողովածու)» (2011), «Հայոց պատմության դասերն ու պատգամները» (2013), «Ցեղասպանություն և հայրենազրկում» (2015) և այլ աշխ-ների: «Հայոց պատմության» (հրտ.՝ 2010–ից) ակադեմ. բազմահատորյակի խմբագր. խորհրդի փոխնախագահ:

ՀՀ «Մովսես Խորենացի» (2003), Ֆրիտյոֆ Նանսեն հիմնադրամի (2010), ՀՀ ՊՆ «Գարեգին Նժդեհ» (2011) մեդալներ, ՀՀ վարչապետի հուշամեդալ (2015) և այլն:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Աշոտ Անատոլիի (1930–2009), նկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (1977): Հեղինակ է գեղանկարչ. գործերի («Գարնանային ջրեր», 1958, «Նոր շրջան», 1971, «Գարուն», 1983, «Փողոց Ծաղկաձորում», «Դաշտային ծաղիկներ», շարք, երկուսն էլ՝ 1995), դիմանկարների («Արմենն», 1972, «Ալլայի դիմանկարը», 1995) ևն: 1990-ական թթ-ից՝ ԱՄՆ-ում:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Արտուշ (Արտյոմ) Սերգեյի (1931–1999), այգեգործ: Գղտ. գիտ. դ-ր (1972), պրոֆ. (1973): ՀՃԱ թղթ. անդամ (1999): Աշխ-ները վերաբերում են խաղողի վազի կենսընթացների կարգավորման, բերքատվության բարձրացման, այգեգործության ինտենսիվացման, ՀՀ կիսաանապատ. հողերում այգիների մշակության արդյունավետ եղանակների ներդրման խնդիրներին:

Խաղողագործության և գինեգործության միջազգ. ակադ-ի անդամ (1999):

ՄԵԼՔՈՆՅԱՆ Գասպար Հովակիմի (1881–1952), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1933), պրոֆ. (1935): Աշխ–ները վերաբերում են ոսկրապատվաստման, ծայրամաս. նյարդերի, կրծքի խոռոչի օրգանների վնասվածքների ու բարդությունների բուժման խնդիրներին: Մ–ի անունով է կոչվել ԵՊԲՀ հոսպիտալ. վիրաբուժության կլինիկան:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Գենադի Իշխանի (1944–2002), կինոռեժ.: 1969–ից՝ Հայֆիլմի ռեժ.: Նկարահանել է «Թթենի» (ըստ Զ. Խալափյանի, 1979, Մոսֆիլմի հետ, կարճամետրաժ ֆիլմերի միջազգ. կփ 3–րդ մրց., 1980, Լիլ), «Որտեղից՝ որտեղ...» (1983, Մոսֆիլմ), «Վերջին կիրակին» (ըստ Ն. Ադալյանի, 1985), «Օդապարուկի օրը» (1986), «Գաղութի արվեստը» (1997, վավերագր.) և այլ ֆիլմեր: Աշխատակցել է նաև «Բումերանգ» կինոժուռնալին (5 ֆիլմ):

ՄԵԼՔՈՆՅԱՆ Գուրգեն Գառնիկի (ծ. 1957), ՀՀ բանակի գեն–լեյտ. (2003): 1989–94–ին մասնակցել է ՀՀ Կապանի, Իջևանի, Նոյեմբերյանի և ԼՂՀ Հադրութի, Շահումյանի, Լաչինի, Կուբաթլուի, Զանգելանի, Քելբաջարի (Օմարի լ–անցք) շրջանների ինքնապաշտպ. և ազատագր. մարտերին: 1998–ից՝ մոտոհրաձգ. ուս. բրիգադի հրամ., 2000–08–ին՝ պաշտպ–յան փոխնախարար:

ՀՀ և ԼՂՀ «Մարտական խաչ» 2–րդ աստիճանի, ՀՀ «Վարդան Սամիկոնյան» շքանշաններ, ՊՆ «Մարշալ Բաղրամյան» և «Անբասիր ծառայության համար» մեդալներ:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Դավիթ Լևոնի (ծ. 1940), անեսթեզիոլոգ–ռեանիմատոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (1997), պրոֆ. (1997): Էդուարդ և Ռաֆայել ***Մելքոնյանների*** եղբայրը: Աշխ–ները վերաբերում են վիրաբուժ. հիվանդների հոգեհուզ. վիճակի շտկման, կետամինային անզգայացման և վերակենդանացման փուլերում իմացական շարժընթացների փոփոխման հարցերին: ՀՀ անեսթեզիոլոգների և ռեանիմատոլոգների ընկերակցության փոխնախագահ (1994–ից):

ՄԵԼՔՈՆՅԱՆ Դմիտրի Ստեփանի (ծ. 1941), ակնաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1986), պրոֆ. (1988): 1995–ից՝ Միդնեյում: Աշխ–ները վերաբերում են աչքի ցանցաթաղանթի և տեսող. կենտրոնի կենսապոտենցիալների համախականության վերլուծության հարցերին:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Երվանդ Կարապետի (1944–1997), բանասեր, դիվանագետ, խմբ.: Բանասիր. գիտ. դ–ր (1994): 1985–1993–ին՝ «Էջմիածին» ամսագրի խմբ.: 1994–97–ին՝ Լիբանանի Հանրապետությունում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար, ապա՝ արտակարգ և լիազոր դեսպան: Մ–ի աշխատասիրությամբ հրատարակվել է Դավիթ Զեյթունցու «Մենկնութիւն քերականի» (1981) երկը:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Զավեն Արսենի (1912–1985), ճարտարագետ–մեխանիկոս: Տեխ. գիտ. դ–ր (1968), պրոֆ. (1969): Աշխ–ները վերաբերում են գղտ. մեքենաների նորոգման հարցերին:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Զարեհ (1923–2012), գրող, խմբ.: 1968–83–ին՝ ՀԲԸՄ–ի Միջին արմ. շրջանակի տնօրեն, 1956–64–ին՝ ԹՄՄ ատենապետ, միաժամանակ, 1956–64–ին՝ «Շիրակ» ամսագրի, «Նուիրում» պաշտոնաթերթի հիմնադիր–խմբ.: 1968–ից՝ ԱՄՆ–ում: Հեղինակ է «Ես եւ մարդիկ» (1943), «Զրուցակիցներ» (1947), «Քերթուածներ» (1962), «Ափերը մինչեւ անկրելիին» (1967), «Լեռներ վիհերուն մէջ» (1978), «Կեանքով եւ մասամբ նորին» (1995, 2012), «Բաւիղէ բաւիղ» (1998), «Մորմոքը՝ տարբաղադրուող երազներուն» (2011) և բանաստեղծությունների այլ ժող–ների, նաև պիեսների:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Էդուարդ Լևոնի (ծ. 1946), պատմաբան, մշակութաբան: Պատմ. գիտ. դ–ր (2005): Դավիթ և Ռաֆայել ***Մելքոնյանների*** եղբայրը: Աշխ–ները վերաբերում են սփյուռքագիտ–յան, պատմության մեթոդաբանության, մշակութաբանության, ՀԲԸՄ պատմության հարցերին:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Լիպարիտ Գևորգի (1909–1976), ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դ–ր (1969), պրոֆ. (1970): Աշխ–ները վերաբերում են էմուլսային համակարգերում պոլիմերման և համապոլիմերման շարժընթացներին: Առաջարկել է բարձրորակ կաուչուկների և լատեքսների ստացման հեշտ իրականացվող արտադր. եղանակ:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Լևոն Սմբատի (1924–2001), ճարտ.: ՀՀ վաստ. ճարտ. (1972): Համահեղինակ է բնակելի տների Երևանում, «Ինտուրիստ» հյուրանոցի (1979–85, այժմ՝ «Արմենիա–2»), ԵԵԿՄ շենքի (1986), մարզադահլիճի (1987), Մտնդ–ի ստորգետնյա գրապահոցի (1988–89), Սևանում՝ քոթեջների (1976–83), Մոսկվայի հայ մշակույթի տան (1981–84) նախագծերի:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Կարապետ (1849–1934), մեծահարուստ, ազգ. բարերար: Եղբոր՝ Գրիգորի հետ հիմնադրել է Մելքոնյան ծխախոտի գործարանը, կուտակել մոտ 6 մլն անգլ. ոսկի, որը 1925–ին ՀԲԸՄ–ի միջոցով կտակել հայ ժողդ–ին: Այդ միջոցներով Կիպրոսում գործել է ***Մելգոնյան կրթական հաստատությունը***, Երևանում հիմնադրվել է հրտչ–յուն (գործել է մինչև 1930–ական թթ–ի վերջերը):

ՄԵԼՔՈՆՅԱՆ Կարինե Վախթանգի (ծ. 1961), բժիշկ–դեղաբան: Կենսբ. գիտ. դ–ր (2008): 2009–ից՝ ԱՄՆ–ում: Աշխ–ները վերաբերում են հիպոկինեզիայի պայմաններում գլխուղեղի հեմոդինամիկ, նյութափոխանակային ու կառուցվածքաբան. փոփոխությունների առանձնահատկություններին և ուղեղային արյան շրջանառության ղեկավարությանը:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Հովհաննես Ռուբենի (1937–2010), գրող: 1988–90–ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար, 1990–2010–ին՝ Հայ գրողների միության նախագահ: Հեղինակ է «Քարավան» (1971), «Հեռավոր հողի ձայնը» (1973), «Հարցաքննություն» (1977), «Սիր ձայնը» (1980), «Հիշողության դաշտ» (1987), «Պատերազմի ծուխը» (1988), «Քարոզարան» (1990) պատմվածքների ու վիպակների ժող–ների, «Ոճիրի բուրգեր» (հ. 1, 2001) փաստագեղ. երկի, «Մերժված օրենսդիրը» (2006) վեպ–էսսեի, «Սատանայի ասպատակությունները» (2004) պարականոն գրքի, «Հայր Տոնապետի մենախոսությունը» (համահեղ.՝ Գ. Զալիկյան), «Հրաժարական» պիեսների: Մ–ի սցենարով նկարահանվել է «Խոնարհվիր վաղվա օրվան» կինոնկարը:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Մագդալինա Մհերի (ծ. 1947), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դ–ր (1989), պրոֆ. (1997): Մհեր ***Մելքոնյանի*** դուստրը: Աշխ–ները վերաբերում են աղմկային գերհույզի զարգացման կենսաքիմ. մեխանիզմներին, բնական ու սինթետիկ հակաօքսիդիչների, տարբեր բնույթի հակագերհույզային ազդեցությամբ կենսբ. ակտիվ միացությունների օգնությամբ փոփոխությունների կարգավորման հարցերին: Կենսագործունեության անվտանգության և էկոլոգիայի միջազգ. ակադ–ի անդամ (2002–ից): ԵՊԲՀ ոսկե մեդալ (2000):

ՄԵԼՔՈՆՅԱՆ Միսակ Վաղարշակի (1938–2009), այգեգործ–ընտրասերումնաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1981), պրոֆ. (1983): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1990–ից): Էջմիածնի «Զվարթնոց» ԱՄ գլխ. տնօրեն (1987–94): Աշխ–ները վերաբերում են խաղողի վազի հետերոզիսի օրինաչափությունների, բերքի որակը որոշող կենսաքիմ. և ֆիզիոլոգ. ցուցանիշների, խաղողի հիբրիդ. սերնդում ժառանգականության բնույթի, բերքատվության, հիվանդա– և ցրտադիմացկունության հարցերին: Խաղողի մի շարք սորտերի հեղինակ է: Ղրիմի ԳԱ խաղողագործության և գինեգործության միջազգ. ակադ–ի անդամ:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Միսաք Վարդգեսի (ծ. 1965), քանդ., նկարիչ: Հեղինակ է կիսանդրինեբի («Տիգրան Պետրոսյան», 1992, «Օհան Դուրյան», 2009, «Մոնթե Մելքոնյան», 2013, «Կոմիտաս», 2014, ևն), դիմաքանդակների («Խորեն Աբրահամյան», «Սոս Սարգսյան», «Մհեր Մկրտչյան», «Կարեն Զանիբեկյան», բոլորը՝ 2009), «Զորավար Անդրանիկ» ձիարձանի (2013), «Լքվածը» քանդակի (2012), նաև բնապատկերների շարքի, դիմանկարների և այլ գործերի:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Միքայել Գվիդոնի (ծ. 1952), ՀՀ բանակի գեն–մայոր (2001): Պատմ. գիտ. թեկնածու (1993): 1992–99–ին՝ ՀՀ ԶՈՒ ԳՇ–ում բաժնի պետ, վարչության պետի տեղակալ, պետի պաշտոնակատար, 1999–2006–ին՝ ՊՆ միջազգ. ռազմ. համագործակցության և պաշտպ. ծրագրերի վարչության պետ: Աշխ–ները վերաբերում են Թուրքիայի ռազմ. քաղ–յան և ՀՀ ռազմ. անվտանգության ապահովման խնդիրներին:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Մհեր Սիմոնի (1920–1996), անասնաբույծ–ընտրասերումնաբան: Տնտ. գիտ. դ–ր (1977), պրոֆ. (1985): Սագդալինա ***Մելքոնյանի*** հայրը: ՀԳԱԱ ակադ. (1996), ՌԴ ագրար. կրթության և գիտ–յան ակադ–ի անդամ (1996): 1961–72–ին՝ ՀԿԿ ԿԿ քարտուղար, 1983–94–ին՝ ԵԱԱԻ ռեկտոր: Աշխ–ները վերաբերում են ոչխարաբուծության տնտ. արդյունավետության բարձրացման, ինտենսիվացման, մասնագիտացման, արդ. հիմքերի վրա փոխադրելու խնդիրներին:

Լենինի, ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի և Կարմիր աստղի շքանշաններ:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Մոնթե Չառլզի, **Ավո** (1957–1993), ազգ–ազատագր. շարժման գործիչ: ՀՀ բանակի փոխգնդ. (1994): ՀՀ Ազգ. (1996, հետմահու), Արցախի (1999, հետմահու) հերոս: 1978–ից մասնակցել է (շուրջ 3 տարի) Լիբանանի քաղաքաց. պատերազմին, պաշտպանել Բեյրութի հայկ. թաղամասը: 1990–ի հոկտ–ից մասնակցել է ՀՀ Իջևանի, Ճամբարակի, ԼՂՀ Շահումյանի, Մարտակերտի, Մարտունու շրջանների ինքնապաշտպ. և ազատագր. մարտերին: Եղել է Մարտունու ՊԾ հրամ., շտաբի պետ, ղեկավարել է Մարտունու (գրաված գյուղեր), Քելբաջարի (Քարվաճառ), Աղդամի (Ակնա, որի Մարզիլի գ–ի մերձակայքում էլ զոհվել է) ազատագր. ռազմագործողությունները:

ՀՀ «Հայրենիք» (1996), ԼՂՀ «Ոսկե արծիվ» (1999), «Մարտական խաչ» 1-ին աստիճանի (1994) շքանշաններ:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Պետրոս Գրիգորի (1905–1965), ճարտարագետ, մանկավարժ: ՀԽՍՀ վաստ. ճարտարագետ: 1937–41-ին՝ Ճարտարագիտատեխ. և տնտ. աշխատողների որակավորման ինստ-ի տնօրեն, 1946–65-ին՝ ԵՊԻ ռեկտոր:

ԽՍՀՄ Կարմիր աստղի, ՀՄՊ 2-րդ աստիճանի, «Պատվո նշան» շքանշաններ:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Ռաֆայել Լևոնի (ծ. 1934), երկրաբան: Երկրբ-ինքբ. գիտ. դ-ր (1989), ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2000): ՀԽՍՀ վաստ. երկրաբան (1985): Էդուարդ և Դավիթ *Մելքոնյանների* եղբայրը: Աշխ-ները վերաբերում են երկրբ-յան, ապարագիտ-յան, երկրաքիմիայի, իզոտոպ. երկրբ-յան, հանքագոյացման հարցերին: «Հայաստանի ազգային ատլասի» խմբագր. խորհրդի անդամ և համահեղ. (հ. 1, 2006): ՌԴՆԳԱ անդամ (1998):

ՄԵԼՔՈՆՅԱՆ Ռուբեն Գուրգենի (ծ.1945), ճարտարագետ-տեխնոլոգ: Տեխ. գիտ. դ-ր (2003), պրոֆ. (2004): ԽՍՀՄ գյուտարար (1987): 2003-ից՝ «Ռոսնեֆտեգազտրեստ» ՓԲԸ փոխնախագահ: Աշխ-ները վերաբերում են նավթագազ. համալիրի բնապահպան. հիմնախնդիրներին: Համահեղինակ է «Կանազիտ» հումքի ստացման տեխնոլոգիայի, հեղինակ՝ ապակու և այլ արդ. թափոնների օգտագործմամբ նոր գեղազարդիչ-երեսպատման նյութերի ստացման տեխնոլոգիայի: ԽՍՀՄ ԺՏՆՅ բրոնզե (1984), ոսկե (1986) և այլ մեդալներ:

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ Անահիտ Սերգեյի (ծ. 1959), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (2006): Սերգեյ *Մելքումյանի* դուստրը, Միքայել *Մելքումյանի* քույրը: Աշխ-ները վերաբերում են աշխ-ի տնտեսագիտ-յան, շուկայի, բնակչության զբաղվածության կարգավորման, ժողովրդագրության, գենդեր. տնտեսագիտ-յան հարցերին:

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ Աշոտ Գալուստի (1922–1984), Փառքի 3 աստիճանի շքանշանակիր (1944, փետր., հունիս, 1945): Կռվել է *Թամանյան դիվիզիայի* կազմում: Շքանշանների արժանացել է Կերչի, Սևաստոպոլի, Լեհաստանի ազատագրման մարտերում ցուցաբերած խիզախության համար:

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ Արտեմ Բոգդանի (ծ. 1951), կինոօպերատոր: 1972-ից աշխատել է Հայֆիլմում (գեղ.՝ «Արարման ութերորդ օրը», 1980, «Տասներեքերորդ առաքյալը», 1987, «Վերադարձ ավետյաց երկիր», 1991, «Լռության սիմֆոնիան», 2001, վավերագր.՝ «Տարվա եղանակներ», 1988, «Մատաղ», 1991, ևն):

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ Թամար Բադդասարի (1914–1981), դերասանուհի: Ադրբ. ԽՍՀ ժող. արտիստ (1961): 1936-ից՝ Ստեփանակերտի թատրոնի դերասանուհի (Էվելմիա, Սալոմե՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», «Քանդած օջախ», Մարգարիտ՝ Շիրվանզադեի «Պատվի համար», Նատաշա՝ Մ. Գորկու «Հատակում», ևն):

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ Մարտիրոս Սարգսի (1916–1983), հետախույզ: ԽՍՀՄ արտաքին հետախուզության գնդ.: 1942–46-ին աշխատել է Իրանում՝ ԽՍՀՄ դեսպանատանը: Նախաձեռնել ու կազմակերպել է ԽՍՀՄ պաշտպ-յան, «Սասունցի Դավիթ» և «Գեներալ Բաղրամյան» տանկ. շարասյուների, որը երեխաների համար հանգանակություններ: 1946-ից՝ տարբեր երկրներում (1947-ին գործուղվել է ՀԽՍՀ):

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ Միխայիլ Արշակի (1925–1994), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (1972), պրոֆ. (1981): Աշխ-ները վերաբերում են համակարգերի ընդհ. տեսությանը, գիտ. հիմունքների և կառավարման միօրինականացված ադապտիվ ավտոմատ համակարգերին: Առաջինն է մշակել և ներդրել կառավարման ավտոմատացված «Արշալույս 2» և «Արշալույս 4» համակարգերը: Անհիմն բռնադատվել է 1942-ին, արդարացվել՝ 1956-ին:

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ Միքայել Սերգեյի (ծ. 1962), տնտեսագետ, քաղ. գործիչ: Տնտեսագիտ. դ-ր (1998), պրոֆ. (2000): Սերգեյ *Մելքումյանի* որդին, Անահիտ *Մելքումյանի* եղբայրը: Եղել է ՀՀ պետ. գույքի կառավարման փոխնախարար (2000–04): Աշխ-ները վերաբերում են ձեռն-ների կազմակերպման, ներդրում. քաղ-յան իրականացման, բիզ-նեսի ծրագրավորման, ՀՀ հարկ., մաքս. քաղ-յան հարցերին:

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ Սերգեյ Ավանեսի (ծ. 1931), աշխարհագետ: Աշխարհագր. գիտ. դ-ր (1973), պրոֆ. (1977): Միքայել և Անահիտ *Մելքումյանների* հայրը: Աշխ-ները վերաբերում են ՀՀ բնական պայմանների և պաշարների տնտ. գնահատման, արդյունավետ օգտագործման, շրջակա միջավայրի պահպանության, արտադրող. ուժերի տեղաբաշխման, ԼՂՀ սոցիալ-տնտ. զարգացման հարցերին: Էկոլոգիայի միջազգ. ակադ-ի անդամ (1997-ից):

ՀՊՏՀ ոսկե հուշամեդալ:

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ Սերգեյ Արշակի (ծ. 1941), ճարտարագետ-շինարար: Տեխ. գիտ. դ-ր (1998), պրոֆ. (2001): Աշխ-ները վերաբերում են առաձգականության, էլեկտրա- և ջերմաառաձգականության տեսությունների:

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ (Մելքումով) Տիգրան Մելիքսեթի (1902–1974), ճարտարագետ-ջերմատեխնիկ, ճարտարագիտատեխ. ծառայության գեն-մայոր (1949): Տեխ. գիտ. դ-ր (1940), պրոֆ. (1941): ՌԽՖՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1957): Աշխ-ները վերաբերում են մխոցավոր, գազատուրբին. և հրթիռ. շարժիչների տեսությանը, շարժիչներում միջուկ. էներգիայի օգտագործման հարցերին: Մշակել և փորձարկել է «Դ-11» օդ. հովացումով ԽՍՀՄ-ում առաջին ավիաշարժիչը:

ՄԵԼՔՈՒՄՈՎ Գեորգի Արտաշեսի (ծ. 1925), ֆթիզիատր: Բժշկ. գիտ. դ-ր (1972), պրոֆ. (1974): Բաշկիր. ԻԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1986): Աշխ-ները վերաբերում են տուբերկուլոզի կլինիկայի և բուժման առանձնահատկություններին՝ կապարային թունավորման ժամանակ:

ՀՄՊ 2-րդ աստիճանի շքանշան (1985):

ՄԵԼՔՈՒՄՈՎ (Մելքումյան) Հակոբ Արշակի (1885–1962), խորհրդ. բանակի հեծյալ բրիգադի հրամ.: Մասնակցել է (1919) Բուխարայում մղված մարտերին, 1922-ին կռվել Միջին Ասիայում Էնվեր փաշայի «Իսլամի բանակի» դեմ, կազմակերպել Կոֆրունշլաղում հեծյալների շրջապատումը և Էնվերի սպանությունը: 1937-ին անհիմն բռնադատվել է, արդարացվել՝ 1954-ին: Հեղինակ է «Թուրքեստանցիներ» (ռուս., 1960) ռազմ. հուշագրության:

ՄԵԼՔՈՒՄՈՎ Վիկտոր Արտեմի (ծ. 1940), ստոմատոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (1978), պրոֆ. (1989): Հետազոտել է դպրոցահասակ երեխաների ատամների ոսկրափուտի և Հասարական. Աֆրիկայի երկրներում ստոմատոլոգ. հիվանդությունների տարածվածությունը, մշակել կանխարգելման և օրթոպեդ. օգնության միջոցառումներ:

ՄԵԽԱԿ (Dianthus), մեխակազգիների ընտանիքի բազմամյա, երկամյա կամ միամյա խոտաբույսերի, հազվադեպ՝ կիսաթփերի ցեղ: Հայտնի է 300 տեսակ, ՀՀ-ում՝ 15(18)՝ գրեթե բոլոր մարզերում: Շատ տեսակներ մշակվում են որպես գեղազարդիչ: Առանձին տեսակներ գրանցված են ՀՀ Կարմիր գրքում: Մ. է կոչվում նաև *մեխակածառի* չորացած կոկոններից ստացվող համեմունքը:

ՄԵԽԱԿԱԶԳԻՆԵՐ, երկտուն բույսերի ընտանիք: Խոտաբույսեր են, կիսաթփեր, հազվադեպ՝ թփեր: Հայտնի է մոտ 2100 տեսակ (մոտ 80 ցեղ)՝ հս. կիսագնդի բարեխառն գոտում: Որոշ տեսակներ գեղազարդիչ են (օր.՝ մեխակը, համասպրամը ևն), մոլախոտ (օր.՝ արջընդեղը, աղավնարոտը ևն): Առանձին տեսակներ (օճառախոտ, ցմախ ևն) պարունակում են սապոնիններ. օգտագործում են հրուշակեղենի, հեղուկ միջատասպան նյութերի արտադր-յան և բժշկության մեջ:

ՄԵԽԱԿԱԾԱՌ (Syzygium aromaticum), մրտենազգիների ընտանիքի մշտադալար ծառ: Հայրենիքը Մոլուկկյան կղզիներն են: Մշակում են մի շարք արևադարձ. երկրներում: Պարունակում է մեխակի յուղ: Մ-ի չորացած կոկոններից ստացվող համեմունքը կոչվում է *մեխակ*:

ՄԵԽԱԿԻ ՅՈՒՂ, եթերայուղ: Ստանում են *մեխակածառի* կանաչ զանգվածից և փայտանյութից: Դեղին հեղուկ է՝ մեխակի հոտով: Խտ.՝ 1,04 *գ/սմ*³: Որպես բուրավետ նյութ օգտագործում են օծանելիքի արտադր-յան մեջ: Էվգենոլի ստացման հումք է և վանող նյութ (մոծակների դեմ):

ՄԵԽԱՆԱԴԻՄԻԱ, ուսումնասիրում է մեխ. ուժերի ազդեցությամբ տեղի ունեցող նյութերի քիմ. փոխարկումները: Մեխ. ուժերի (օր.՝ մամլման, մանրացման, գլանման ևն) ազդեցությամբ նյութերում քիմ. կապերը խզվում են, առաջանում են քիմ. շարժընթացներն ակտիվացնող ազատ ռադիկալներ, նկատելիորեն փոխվում են նյութերի ֆիզ. և քիմ. հատկությունները: Մեխանաքիմ. եղանակով կատարում են պոլիմերների կառուցվածքախախտում, միջմետաղ. միացությունների և ֆերիտների սինթեզ, ստանում են ամորֆ համաձուլվածքներ, ակտիվացնում են փոշենման նյութեր (ադսորբենտներ, լցանյութեր, կապակցանյութեր, պարարտանյութեր ևն):

ՄԵԽԱՆԻԶՄ (հուն.՝ mēchanē – գործիք), համակարգ, որը նախատեսված է 1 կամ մի քանի մարմինների շարժումներն այլ մարմինների պահանջվող շարժումների վերափոխելու համար: Մ-ները մեքենաների մեծ մասի հիմքն են, օգտագործվում են բազմաթիվ սարքերում, ապարատներում, սարքավորումներում: Բաղկացած են օղակներից, որոնք մեկ կամ մի քանի անշարժ միացված դետալներ են: Շարժական միացված 2 օղակը կինեմատիկ. զույգ է: Առավել տարածված են պտտ. (հոդակապ), առաջընթաց (սողան և ուղղորդիչ), պարուրակային (պտուտակ և մանեկ), գնդոլորտ. (գնդային հոդակապ) կինեմատիկ. զույգեր:

ՄԵԽԱՆԻԶՄ՝ՆԵՐԻ ԿԻՆԵՄԱՏԻԿԱ (հուն.՝ kinetos – շարժվող), մեքենաների և մեխանիզմների տեսության բաժին, որն ուսումնասիրում է մեխանիզմի օղակների

(մասերի) շարժումը՝ անկախ նրանց վրա կիրառված ուժերից: Հիմն. խնդիրներն են մեխանիզմների օղակների շարժման որոշումը՝ ըստ սկզբն. անվանված մեկ կամ մի քանի օղակների տրված շարժումների, և մեխանիզմների սխեմաների գծագրումը՝ ըստ տրված կինեմատիկ. պայմանների:

ՄԵԽԱՆԻԿԱ (հուն.՝ mechanike – մեքենաների կառուցման արվեստ), գիտ-յուն նյութ. մարմինների մեխ. շարժման (այսինքն՝ ժամանակի ընթացքում մարմինների կամ նրանց մասերի փոխադարձ դիրքերի փոփոխության և նրանց միջև փոխազդեցության մասին: Դաս. Մ-ի հիմքում դրված են Նյուտոնի օրենքները: Մ-ի մեթոդներով ուսումնասիրում են ցանկացած նյութ. մարմինների (բացի միկրոմասնիկներից) շարժումները, որոնց արագություններն անհամեմատ փոքր են լույսի արագությունից: Մ. բաժանվում է ստատիկայի, կինեմատիկայի և դինամիկայի: Մ-ի օրենքները կիրառում են մեքենաների, մեխանիզմների, շին. կառույցների, տրանսպորտ. միջոցների, տիեզ. թռչող սարքերի հաշվարկների համար: Մ-ի հիմնադիրներն են Ի. *Նյուտոնը*, Գ. *Գալիլեյը* և ուր.:

Հոծ միջավայրի Մ. գիտ-յուն է գազերի, հեղուկների և դեֆորմացվող պինդ մարմինների շարժման ու հավասարակշռության, նաև այլ միջավայրերում ֆիզքիմ. շարժընթացների մասին: Հոծ միջավայրի Մ-ի բաժիններից են հեղուկների և գազերի Մ., գազ. դինամիկան, մագնիս. հիդրոդինամիկան, առաձգականության տեսությունը, պլաստիկության տեսությունը ևն: Այստեղ դիսկրետ կառուցվածքով իրական միջավայրերը դիտարկվում են որպես անընդհատ:

Սորուն միջավայրի Մ. հոծ միջավայրի Մ-ի բաժինն է. ուսումնասիրում է ավազ. գրունտի հատիկների և այլ սորուն միջավայրերի հավասարակշռությունն ու շարժումը: Սորուն միջավայրի Մ-ի հիմն. բաժիններից է *գրունտների մեխանիկան*:

Հեղուկների և գազերի Մ. ուսումնասիրում է հեղուկ ու գազանման միջավայրերի հավասարակշռությունը և շարժումը, նրանց փոխազդեցություններն իրար և պինդ մարմինների հետ: Նկարագրվում են տարբեր մասշտաբների շարժընթացներ՝ սկսած տարր. մասնիկների բախումից և քվանտ. հեղուկների հոսքերից մինչև աստղերի կառուցվածքն ու Տիեզերքի էվոլյուցիան: Արդյունքներն օգտագործում են տեխնիկայում, երկրբ-յան, օդերևութաբանության, մետաղագործության և քիմ. արդ-յան մեջ:

Փոփոխական զանգվածով մարմինների Մ. ուսումնասիրում է մարմինների շարժումը, երբ նրանց զանգվածը փոխվում է ժամանակի ընթացքում՝ մարմնից նյութ. մասնիկների անջատման (կամ միացման) հետևանքով: Այդպիսի խնդիրներ առաջանում են հրթիռների, ռեակտիվ ինքնաթիռների, երկն. մարմինների և այլ օբյեկտների շարժման ժամանակ:

ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀՀ ԳԱԱ, կազմակերպվել է 1971-ին Երևանում՝ ՀԽՍՀ ԳԱ մաթ-ի և մեխանիկայի ինստ-ի (հիմն.՝ 1955) բաժանմամբ: Ստացված հիմն. արդյունքներն են. կառուցվել է համասեռ և անհամասեռ ծերացող մարմնի սողքի, շերտավոր, անիզոտրոպ սալերի և թաղանթների դաս., ճշգրտված և ասիմպտոտիկ, բարակապատ մարմինների մագնիսաառաձգականության տեսությունները, հայտնաբերվել է թերլարվածության երևույթը (Կարապետ *Չորանյան*, 1978): Տպագրվել են 30-ից ավելի մենագրություններ, որոնց զգալի մասը թարգմանվել է այլ լեզուներով: Տնօրեններ՝ Սերգեյ Համբարձումյան, Գևորգ Աբգարյան, Վարդգես Գնունի, Սերգեյ Դուրգարյան, Գևորգ Բաղդասարյան, Լենսեր Աղալովյան, Վահրամ Հակոբյան (2006-ից):

ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ՎԱՐԻԱՑԻՈՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, մեխ. համակարգի ընդհ. հատկություններն արտահայտող ելման դրույթներ, որոնցից, որպես հետևանք, ստացվում են այդ համակարգի շարժման հավասարումները կամ հավասարակշռության պայմանները: Մ. վ. ս. հնարավորություն են տալիս մեխ. համակարգի իրական շարժումը (վիճակը) տարբերել հնարավոր բոլոր շարժումներից, որոնք թույլատրվում են համակարգի վրա դրված մեխ. կապերով: Մ. վ. ս-ի օրինակներ են *փոքրագույն գործողության սկզբունքը, Դ' Ալամբեր-Լագրանժի սկզբունքը, հնարավոր տեղափոխությունների սկզբունքը*:

ՄԵԽԱՆՈՄԸՆԿԱԼԻՉՆԵՐ, **մեխանոռեցեպտորներ**, զգացող նյարդ. վերջավորություններ, որոնք ընկալում են մեխ. գրգիռները դրսից (շոշափական, ցավային, լողական ևն) կամ ներքին օրգաններից (դրանց ընկալում են ճնշաընկալիչները, անդաստակարընկալիչները, պրոպրիոցեպտորները ևն):

ՄԵԽԱՆՈՂԱԼՈՐԻԱԿԱՆ ԷՖԵԿՏ, հիդրոդինամիկ. մեծ դիմադրության խուդակներով (օր.՝ բարակ մազանոթով կամ ծակոտկեն միջնապատով) հոսելիս գերհոսուն հելիումը սառչում է, որն ուղեկցվում է անոթում մնացած հեղուկ հելիումի տաքացմամբ: Մ. է. հայտնաբերել են գերհոսուն ^{4}He-ի դեպքում անգլիացի ֆիզիկոսներ Ջ. Դաունթը և Կ. Մենդելսոնը 1939-ին:

ՄԵԽԱՆՈՄՍՏՐԻԿՑԻԱ (< *մեխանիկա* և լատ.՝ strictio – սեղմում, ձգում), լրացուցիչ դեֆորմացիայի առաջացում՝ ֆեռո-, ֆեռի- և հակաֆեռոմագնիս. նմուշներում՝ նրանց մագնիս. վիճակի փոփոխությամբ պայմանավորված մեխ. լարվածության կիրառման դեպքում: Նմուշի դեֆորմացիան (օր.՝ ձգումը) կարող է համեմատական չլինել մեխ. լարմանը, այսինքն՝ դիտվում է շեղում *Հուկի օրենքից*: Մ. *մագնիսաապրիկցիայի* հետևանք է:

ՄԵԽԱՆՈՏՐՈՆԻԿԱ, գիտ-յան և տեխնիկայի բնագավառ. հիմնված է ճշգրիտ մեխանիկայի օղակների ու էլեկտրոն., էլեկտրատեխ. ու համակարգչ. բաղադրիչների սիներգետիկ. միացման վրա և ապահովում է ֆունկցիոնալ շարժումների ինտելեկտուալ կառավարմամբ որակապես նոր մոդուլների, համակարգերի ու մեքենաների նախագծումն ու արտադրյունը: Ձևավորվել է 1990-ական թթ-ին՝ ճշգրիտ մեխանիկայի, համակարգչ. կառավարման, SS-ի և միկրոէլեկտրոնիկայի սահմանագծին:

ՄԵՔԻԿԱ (Mejico, Mexico), *Մեքսիկայի* մայրաքաղաքը (1821-ից), Մեքսիկ. բարձրավանդակի հվ-ում՝ միջլեռն. իջվածքում՝ 2240 *մ* բարձր-յան վրա: Երկրի գլխ. տնտ., քաղ. և կրթամշակութ. կարևոր կենտրոնն է: Բն.՝ մոտ 8,56 մլն (արվարձաններով՝ 23 մլն, 2010): Արվարձանների հետ ինքնուրույն վտմ է: Ունի մետրոպոլիտեն և օդանավակայան: Լատ. Ամերիկայի խոշորագույն տնտ. կենտրոններից է: Կան ավտոհավաքման, էլեկտրատեխ., տեքստիլ, քիմ., սննդի, մետաղաձուլ., նավթի և գազի վերամշակման ձեռն-ներ: Գործում են բազմաթիվ համալսարաններ (այդ թվում՝ խոշորագույնը՝ Լատ. Ամերիկայում), թատրոններ և թանգարաններ: Հաճախակի են ավազամրրիկներն ու երկրաշարժերը (ամենաավերիչը՝ 1985-ին): Մ-ում տեղի են ունեցել XIX օլիմպ. խաղերը (1968): Մ. հիմնադրել են իսպանացիները՝ ացտեկների ավերված Տենոչտիտլան ք-ի (հիմն.՝ 1325) տեղում 1521-ին: 1535–1821-ին եղել է Նոր Իսպանիա փոխթագավորության մայրաքաղաքը: Կան հին բուրգեր, բազմաթիվ հաս. շենքեր, XVI–XIX դդ-ի վանքեր և ժամանակակից ճարտ. համալիրներ (Համալսարան. քաղաքը, Օլիմպ. և «Ացտեկա» մարզադաշտերը ևն): Պատմ. կենտրոնը Համաշխ. մշակույթի ժառանգության ցանկում է:

ՄԵԽԼՈՒՆ, XVII դ-ի 1-ին քաոորդի գյուղաց. շարժման առաջնորդ Հայաստանում: Մ-ի գլխավորած շարժումն սկսվել է կրոն. քողի տակ, սակայն 1606–20-ին ստացել է սոցիալ. բնույթ: Մ. իր հետևորդներով Քանաքեռում ընդհարվել է Երևանի Ամիրգունա խանի զորքի հետ: Շարժումը ճնշվել է, իսկ Մ. արտաքսվել է խանության սահմաններից:

ՄԵԾ ԱՂԻ ԼԻՃ (Great Salt Lake), մնացորդ. անհոսք աղի լիճ ԱՄՆ-ի արմ-ում: Մակերեսը՝ 2500–6000 *կմ*^{2}: Մակարդակի և մակերեսի փոփոխությունները պայմանավորված են ձնհալքով և մթն. տեղումներով: Միջին խոր.՝ 4,5–7,5 *մ*, աղիությունը՝ 137–300 ‰: Աղերի (կերակրի և գլաուբերյան) ընդհ. պաշարը՝ 6 մլրդ *տ*:

ՄԵԾ ԱՐԳԵԼԱԽՈՒՄԲ, բուստ. կղզիների և խութերի շարք: Զգվում է Ավստրալիայի հս-արլ. ափին զուգահեռ՝ Նոր Գվինեայի հվ. ափերից մինչև Սանդի Քեյփ հրվանդանը: Երկ.՝ 2300 *կմ*, լայն.՝ 2–150 *կմ*: Խութերի մեծ մասը ջրի տակ է և մերկանում է միայն տեղատվության ժամանակ: Մայրցամաքից բաժանվում է Մեծ ծովալճակով կամ «Ներքին ջրանցքով»: Օվկ-ի կողմից ունի մոտ 20 անցում: Համաշխ. մշակույթի ժառանգության ցանկում է:

ՄԵԾ ԱՐՈՍ (Otis tarda), *արոսների* ընտանիքի թռչուն: Չվող է, հազվադեպ: ՀՀ թռչնաշխարհի ամենախոշոր ներկայացուցիչն է: Հանդիպում է Սարդարապատի չոր տափաստաններում (Արմավիրի մարզ): Մարմնի երկ.՝ 75–105, թևերի բացվածքը՝ 190–250 *սմ*, կ. զ.՝ 4–15 *կգ*: Կազմում է ոչ մեծ երամներ: Մնվում է կանաչ բույսերի սերմերով, միջատներով, գորտերով ևն: Արժեքավոր որսաթռչուն է: ՀՀ-ում անհատ. պաշտպ-յան կարիք ունի:

ՄԵԾ ԱՐՋ (լատ.՝ Ursa Major), Հս. կիսագնդի համաստեղություն՝ Վիշապ, Եզնարած, Որսկան Շներ, Վերոնիկայի Վարսեր, Առյուծ, Փոքր Առյուծ, Լուսան, Ընձուղտ համաստեղությունների միջև: Մ. Ա-ի մեջ առանձնացնում են 7 աստղերից կազմված խումբը՝ **Մեծ Շերեփը**: Շերեփի բռնակի միջին աստղը կոչվում է *Միցար*, նրա կողքին տեղակայված է *Ալկոր* թույլ աստղը:

ՄԵԾ ԱՐՋԻ ԼԻՃ (Great Bear Lake), Կանադայի հս-արմ-ում: Բարձր. ծ. մ-ից՝ 119 *մ*, մակերեսը՝ մոտ 30 հզ. *կմ*^{2}, խոր.՝ մինչև 137 *մ*: Լճից սկիզբ է առնում համանուն գետը:

Նավարկելի է (օգոստ–սեպտ.)։ Ափերը բարձրադիր են՝ ասեղնատերև անտառներով։ Հարուստ է ձկնային պաշարներով։

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ թագավորություն, պետություն Հս–արմ. Եվրոպայում։ Զբաղեցնում է Մեծ Բրիտանիա կղզին, Իռլանդիա կղզու հս–արլ. և բազմաթիվ փոքր կղզիներ ու կղզեխմբեր։ Տարածքը՝ շուրջ 242,9 հզ. *կմ*², բն.՝ 61,1 մլն (2009)։ Մայրաքաղաքը՝ Լոնդոն։ Պետ. լեզուն՝ անգլ.։ Կառավարման ձևը՝ սահմանադրամիապետ.։ Պետության գլուխը թագուհին է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը։ Բաժանված է 4 վարչաքաղ. մասերի (Անգլիա, Շոտլանդիա, Ուելս, Հս. Իռլանդիա), որոնք ունեն ներքին լայն ինքնավարություն։ Հավատացյալները հիմնականում Անգլիական եկեղեցու հետևորդներ են։ Անդամակցում է ՄԱԿ-ին, ՆԱՏՕ-ին, ԵԱՀԿ-ին, ԵՄ-ին ևն։ Աշխարհի տնտեսապես զարգացած երկրներից է։ ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 35,4 հզ. ԱՄՆ դոլար է (2009)։ Արտահանում է մեքենաներ և սարքավորումներ, քիմ. և դեղագործ. արտադրանք, հագուստ, կոշիկ ևն, ներմուծում արդ. ապրանքներ, վառելանյութ, տրանսպորտ. միջոցներ, շինանյութ, սննդամթերք ևն։ Դրամ. միավորը՝ ֆունտ ստեռլինգ։

Մ. թ. ա. I հզ–ամյակում մայրցամաքից Մ. Բ–ի տարածք են գաղթել կելտ. ցեղերը՝ *բրիտները*։ Մ. թ. I դ–ի կեսին կղզին նվաճել են հռոմեացիները (Բրիտանիա պրովինցիա), V դ–ի կեսից–VII դ–ի սկիզբը՝ հս–գերմ. ցեղերը՝ անգլերը, սաքսերը, յուտերը (բացառությամբ Ուելսի և Շոտլանդիայի), որոնք ստեղծել են մի շարք վաղավատատիր. թագավորություններ (Քենտ, Ուեսեքս, Մերսիա ևն)։ ***Անգլո–սաքսոնական նվաճումների*** ընթացքում բրիտների մեծ մասը ոչնչացվել է, մի մասը՝ մղվել հս (Կալեդոնիա) և արմ. (Ուելս, Կոռնուոլ) ու գաղթել Արմորիկա թ–կղզի (ներկայի *Բրետան*)։ VI դ–ի վերջին սկսվել և VII դ–ի 2–րդ կեսին ավարտվել է անգլո–սաքսերի քրիստոնեացումը։ VIII դ–ի վերջին սկսվել են նորմանների (դանիացիներ՝ անգլ. պատմության մեջ) արշավանքները, նրանք նվաճել են երկրի ամբողջ հս–արմ. մասը և այնտեղ տարածել իրենց սովորույթներն ու բարքերը։ IX դ–ի սկզբին ավարտվել է անգլո–սաքսոն. պետությունների միավորումը մեկ միասն. թագավորության՝ Անգլիայի մեջ։ Հաստինգսի ճակատամարտից (1066) հետո Անգլիան նվաճել է նորմանդ. դուքս Վիլհելմը և դարձել Անգլիայի թագավոր (*Վիլհելմ I Նվաճող*)։ Հենրի II Պլանտագենետը (1154–89) նվաճել է Ֆրանսիայի զգալի մասը։ XII դ–ի 2–րդ կեսից սկսվել է Իռլանդիայի նվաճումը։ 1265–ին ստեղծվել է խորհրդարան, որը վերջնականապես ձևավորվել է Էդուարդ I–ի օրոք (1272–1307)։ Պարտվելով Ֆրանսիային Հարյուրամյա պատերազմում (1337–1453)՝ Անգլիան կորցրել է մայրցամաքի իր բոլոր տիրույթները՝ բացի Կալեից։ Էլիզաբեթ թագուհու (1558–1603) օրոք Անգլիան սկսել է գաղութ. նվաճումներն Իռլանդիայում, Հս. Ամերիկայում։ Ծովում գերիշխելու պայքարն Իսպանիայի դեմ ավարտվել է Անգլիայի հաղթանակով (իսպ. «Անհաղթ արմադայի» ջախջախումը 1588–ին)։ 1640–ին սկսվել է բուրժ. հեղ–յուն (տես ***Անգլիական հեղափոխություն 1640–60***), իշխանությունն անցել է Երկարատև խորհրդարանին։ 1–ին (1642–46) և 2–րդ (1648) քաղաքաց. պատերազմներն ավարտվել են թագավոր. զորքերի ջախջախմամբ, Անգլիան հռչակվել է հանրապետություն։ 1653–ին հաստատվել է Օ. Կրոմվելի պրոտեկտորատը (մինչև 1658–ը), 1660–ին վերականգնվել է Ստյուարտների միապետությունը։ 1688–ին Հակոբ II թագավորը գահընկեց է արվել, և խորհրդարանը թագը հանձնել է շտատհալտեր Վիլհելմ Օրանացուն (1689–ից՝ Անգլիայի թագավոր Վիլհելմ III)։ Այդ ժամանակ երկրում ձևավորվել են 2 կուս–յուններ՝ ***վիգեր*** (թագավորի հակառակորդներ) և ***տորիներ*** (թագավորի կողմնակիցներ)։ XIX դ–ի կեսին դրանց հիման վրա ստեղծվել են, համապատասխանաբար, լիբերալ և պահպանող. կուսյունները։ 1707–ի ունիայով՝ Շոտլանդիան վերջնականապես միացվել է Անգլիային, և Միացյալ Թագավորությունը կոչվել է Մ. Բ.։ XVII–XVIII դդ–ում Մ. Բ. խոշոր տիրույթներ է գրավել Հնդկաստանում, Հս. Ամերիկայում, Ֆրանսիայից զավթել է Կանադան։ XVIII դ–ի 60–70–ական թթ–ին ուժեղացրել է ազատագր. պայքարը Հս. Ամերիկայի անգլ. գաղութներում (տես ***Անկախության պատերազմ Հյուսիսային Ամերիկայում 1775–83***)։ 1783–ին ստորագրել է Վերսալի հաշտությունը և ճանաչել ԱՄՆ–ի (13 գաղութներ) անկախությունը։ XVIII դ–ի վերջ–XIX դ–ի սկզբին Մ. Բ. հեղ., ապա նապոլեոնյան Ֆրանսիայի դեմ դաշինքի գլխ. կազմակերպիչն էր։ 1814–15–ի Վիեննայի վեհաժողովի որոշմամբ Մ. Բ–ին են անցել նրա նվաճած Մալթա կղզին, Կապ գաղութը (Հվ. Աֆրիկայում), Ցեյլոն կղզին և այլ տարածքներ։ Հետագայում զավթել է Նոր Զելանդիան (գաղութ է հռչակվել 1840–ին), ընդարձակ տարածքներ Բիրմայում, Հվ. Աֆրիկայում, ավարտվել է Հնդկաստանի նվաճումը, զավթող. պատերազմներ մղել Չինաստանի (1840–42, 1856–60), Աֆղանստանի (1838–42) դեմ, դաժանորեն ճնշել ազգ–ազատագր. ապստամբությունները Հնդկաստանում (1857–59), Իռլանդիայում (1848–67) ևն։ 1899–ին Մ. Բ–ի գաղութ. տիրույթները կազմել են 30 մլն *կմ*² 345 մլն բնակչությամբ։ 1914–ի օգոստ. 4–ին Մ. Բ. պատերազմ է հայտարարել Գերմանիային (տես ***Առաջին համաշխարհային պատերազմ***)։ Պատերազմի արդյունքում Մ. Բ. ընդլայնել է իր գաղութ. կայսրությունը (տես ***Վերսալի հաշտության պայմանագիր 1919***)։ 1939–ի սեպտ. 3–ին Մ. Բ. պատերազմ է հայտարարել Գերմանիային։ Անգլ. էքսպեդիցիոն ուժերը, որոնք 1940–ին գործում էին Ֆրանսիայում և Բելգիայում, պարտություն են կրել (տես ***Դյունկերքի ռազմագործողություն*** 1940)։ 1941–ի հուլիսի 12–ին կնքվել է անգլո–խորհրդ. համաձայնագիր՝ Գերմանիայի դեմ համատեղ ռազմ. գործողությունների մասին, օգոստ. 14–ին՝ Ատլանտ. խարտիան՝ Մ. Բ–ի և ԱՄՆ–ի միջև։ Կազմավորվել է հակահիտլեր. դաշինք՝ ԽՍՀՄ–ի, ԱՄՆ–ի և Մ. Բ–ի գլխավորությամբ։ 1940–70–ին անկախացել են Մ. Բ–ի գրեթե բոլոր գաղութները։ 1982–ին պատերազմ է բռնկվել Մ. Բ–ի և Արգենտինայի միջև՝ Ֆոլկլենդյան (Մալվինյան) կղզիների պատկանելության խնդրով։ ԵՀՊ–ից հետո երկրի կառավարումը փոխնեփոխ ստանձնել են լեյբորիստները (1945–51, 1964–70, 1974–79, 1997–2010) և պահպանողականները (1951–64, 1970–74, 1979–97, 2010–ից՝ լիբերալ–դեմոկրատների հետ դաշինքով)։ 2016–ի հանրաքվեում Մ. Բ–ի քաղաքացիները քվեարկել են ԵՄ–ից երկրի դուրս գալու օգտին (անդամակցել է 1973–ին)։ Մ. Բ. ԱՄՆ–ի գլխ. դաշնակիցն է և պաշտպանում է ԱՄՆ–ի գործողությունները Հարավսլավիայում (1999), Աֆղանստանում (2001), Իրաքում (2004) և Սիրիայում (2014)։

Մ. Բ–ում հայկ. համայնքներ ստեղծվել են XIX դ–ի 30–ական թթ–ին Լոնդոնում, Մանչեստրում և Լիվերպուլում։ Առաջին հայերն այստեղ Կոստանդնուպոլսից և Հնդկաստանից ժամանած վաճառականներն էին։ 1870–ին Մանչեստրում կառուցվել է հայկ. եկեղեցի (Սբ Երրորդություն)։ Մ. Բ–ի հայ գաղութն ստվարացել է ԱՀՊ–ից հետո, երբ այնտեղ հաստատվել են Թուրքիայից, Իրանից և Կովկասից գաղթած բազմաթիվ հայեր։ 1960–70–ական թթ–ին հայերի հոսքը Մ. Բ. ավելացել է հատկապես Կիպրոսից, Լիբանանից, Սիրիայից և Եգիպտոսից, ԽՍՀՄ–ի փլուզումից (1991) հետո՝ նաև ՀՀ–ից։ Ներկայում հայերի թիվը շուրջ 16 հզ. է։ Լոնդոնում գործում է ՀԱԵ 3 եկեղեցի. Անգլիայի թեմի առաջնորդանիստը Սբ Սարգիս եկեղեցին է։ Մայրաքաղաքում և Մանչեստրում բացվել են շաբաթօրյա և կիրակնօրյա դպրոցներ։ 1998–ից լույս է տեսնում «Նոր սերունդի ձայն» պարբ–ը։ Գործում են Անգլո–հայկ., Հայկ. առաջադիմ. Լոնդոնի հայ երիտասարդաց միությունները, ՀԲԸՄ–ի և ՀՕՄ–ի Լոնդոնի մասնաճյուղերը և այլ կազմ–յուններ։

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Մեծ Բրիտանիայում հայ. գրքեր տպագրվել են դեռևս XVIII դ–ի 1–ին կեսից։ Լոնդոնում 1–ին գիրքը՝ Մովսես Խորենացու «Պատմութիւն եւ աշխարհագրութիւն»–ը (հայ. և լատ.), տպագրվել է 1736–ին Կ. Ակքերսի տպարանում։ Հայ. գրքեր են լույս տեսել Ջ. Ռիվինգտոնի, Կ. Մ. Ուադսի, Կյուլբերտի և Ռիվինգտոնի, «Հայկական Ազատ», «Հնչակ» տպարաններում։ Մանչեստրում 1864–ին Կարապետ Շահնազարյանը տպագրել է Միքայել Ասորու «Ժամանակագրութիւնը», լույս է ընծայել նաև Մեծ Բրիտանիայում առաջին պարբ–ը՝ *«Երկրագունդ»*–ը։ Օքսֆորդում՝ «Կալդերոն Պրես» տպարանում, 1892 և 1898–ին տպագրվել են Ֆ. Կոնիբերի գրքերից 2–ը։ Մեծ Բրիտանիայում ցայսօր հրատարակվել է շուրջ 20 անուն պարբ., ներկայում լույս է տեսնում *«Նոր սերունդի ձայն»* (1998–ից, Լոնդոն) ամսաթերթը։

ՄԵԾ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, դատավար. գերագույն մարմին միջնադար. Հայաստանում՝ Հայոց կաթողիկոսի գլխավորությամբ։ Տեղ. դատարանները գլխավորել են թեմ. եպս–ները։ Կիլիկյան Հայաստանում գործել է թագավորի ձեռքում կենտրոնացված աշխարհիկ դատարանը։

ՄԵԾ ԴԵՊՐԵՍԻԱ, եզրույթ, որն օգտագործվում է 1929–33–ին ԱՄՆ–ում և Արմ. Եվրոպայի երկրներում համակարգ. (տնտ., սոցիալ., քաղ.) ճգնաժամը բնորոշելու համար։

ՄԵԾ ԵՂԵՌՆ, տես *Հայոց ցեղասպանություն*։

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիր Երևանում՝ Ծիծեռնակաբերդ բլրի վրա (1965–67,

հեղինակ–ճարտ–ներ՝ Արթուր *Թարխանյան*, Սաշուր *Քալաշյան*): Ընդհ. հարթակի վրա ուղղանկյուն սալն է՝ որպես զոհերի տապան, որի եզրին՝ 100 *մ* երկ–յան ցածր հուշապատը: Սալի վերջնամասում պանթեոնն է և սայրը: Պանթեոնը բաղկացած է բազալտե 12 մույթից, որոնց միջակա սանդուղքներն իջնում են դեպի շրջանաձև հատակը, որի կենտրոնում հավերժ. կրակն է: Սայրը Հայաստանի վերածնունդը խորհրդանշող բրգաձև հուշասյուն է (բարձր.՝ 40 *մ*):

ՄԵԾ ԵՂՆԱԽԱՊ, *Եղնախաղի լեռնաշղթայի* ամենաբարձր լ–գագաթը (3042 *մ*)՝ ՀՀ, Վրաստանի և Թուրքիայի սահմանագլխին: Լանջերը զառիթափ են: Լանդշաֆտը լ–տափաստանային է, բարձրադիր գոտում՝ լ–մարգագետնային:

ՄԵԾ ԵՐԱՇՏԱՀԱՎ, (Parus masor), *երաշտահավերի* ընտանիքի թռչուն: Նստակյաց է: Մարմնի երկ.՝ 14, թևերի բացվածքը՝ 22,5–25,5 *սմ*: Չափազանց շարժունակ է: Ապրում է անտառներում, պտղատու այգիներում, պուրակներում, ձմռանը՝ թփուտ. կիսաանապատներում: Մնվում է անողնաշարներով, սերմերով, պտուղներով: Աչքի է ընկնում մեծ պտղաբերությամբ:

ՄԵԾ ԶԱՎ, գետ Հայկ. լ–աշխարհում: Տիգրիսի ձախ վտակը: Սկիզբ է առնում Կորդվաց լ–ների Աղրակ լ–շղթայի արլ. լանջերից: Երկ.՝ 473 *կմ*, ավազանը՝ 26,2 հզ. *կմ*^{2}, ջրի ծախսը՝ 403 *մ*^{3}/*վ*: Միջին հոսանքում կա ջրամբար:

ՄԵԾ ԶՈՆԴՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ, Մալայան կղզեխմբի հիմն. մասը: Մեծ մասամբ Ինդոնեզիայում է. ներառում է Սումատրա, Ճավա, Կալիմանտան, Սուլավեսի և այլ կղզիներ:

ՄԵԾ ԹՎԵՐԻ ՕՐԵՆՔ, 1. (մաթ.) *հավանականությունների տեսության* հիմն. սկզբունքներից, ըստ որի՝ մեծ թվով պատահական գործոնների համատեղ գործողությունների դեպքում արդյունքը, որոշ բավականաչափ ընդհ. դեպքերում, ըստ էության՝ պատահական չէ, գրեթե կախված չէ դիպվածից: Ճշգրիտ մաթ. ձևակերպումը տվել է Պ. *Չեբիշևը* XIX դ–ի կեսին: 2. (Տնտ.) որոշակի տեսակի ֆին. ծախսերը կարող են կանխատեսվել մեծ ճշգրտությամբ, եթե գոյություն ունենն նմանօրինակ մեծ թվով կորուստներ: 3. (Սոցիոլոգիա) զանգված. հաս. երևույթներին բնորոշ քանակ. օրինաչափություններն առավել ակնառու դրսևորվում են բավական մեծ թվով դիտարկումների դեպքում:

ՄԵԾ ԼՃԵՐ (Great Lakes), խոշոր լճերի խումբ ԱՄՆ–ում և Կանադայում: Ընդգրկում է Վերին, Հուրոն, Միչիգան, Էրի և Օնտարիո լճերը: Ընդհ. մակերեսը՝ 245,2 հզ. *կմ*^{2}, ավազանը՝ 22,7 հզ. *կմ*^{3}: Քաղցրահամ ջրերի ամենամեծ կուտակարանն են աշխարհում: Արտահոսքը՝ Օնտարիո լճից սկիզբ առնող Սբ Լավրենտիոս գետով Ատլանտ. օվկ.: Նավարկելի են (8–9 ամիս, ջր. ուղիների երկ.՝ 3000 *կմ*): Գլխ. նվինգստ–ներն են Չիկագոն, Միլուոկին, Դուլութը, Քլիվլենդը, Էրին, Բուֆալոն (ԱՄՆ), Տորոնտոն (Կանադա) ևն:

ՄԵԾ ԽԻՆԳԱՆ, լեռն. համակարգ Չինաստանում և Մոնղոլիայում: Երկ.՝ 1200 *կմ*, բարձր.՝ մինչև 1949 *մ*: Կան ասեղնատերև տայգա, անտառատափաստան., լայնատերև անտառներ: Կարևորագույն բնական սահմանագիծ է Կենտր. և Արլ. Ասիայի միջև:

ՄԵԾ ԿԱՆԻՈՆ (Grand Canyon), **Կոլորադոյի Մեծ Կանիոն**, ԱՄՆ Արիզոնա նահանգում՝ Կոլորադո գետի միջին հոսանքում: Աշխարհի ամենախոր կանիոններից է: Երկ.՝ 446 *կմ*, խոր.՝ մինչև 1600 *մ*, լայնությունը սարահարթի մակերևույթին՝ 8–25 *կմ*, գետի ջրագծի կտրվածքում՝ 1 *կմ*–ից պակաս (առանձին հատվածներում՝ 120 *մ*): Տարածքում է Մ. կ. ազգ. պարկը: Զարգացած է զբոսաշրջությունը:

ՄԵԾ ԿԻՍԱԳՆԴԵՐ գլխուղեղի, զույգ գոյացություններ, որոնք, միանալով, բրտամարմնի միջոցով գոյացնում են ծայրային ուղեղը: Մակերևույթն ունի բազմաթիվ մեծ կամ փոքր, խոր գալարներ՝ ճակատ., գագաթ., քունք., կողգլակ., ծոծրակ.: Գլխուղեղի գորշ նյութը՝ կազմված նյարդաբջիջներից (նեյրոններ), գոյացնում է մեծ կիսագնդերի կեղևը և ենթակեղև. հանգույցները (գանգլիոններ): Սպիտակ նյութը բաղկացած է նեյրոնների կողգլակներից, որոնցից կազմված են գլխուղեղի հաղորդիչ ուղիները:

ՄԵԾ ԿԻՍԱԳՆԴԵՐԻ ԿԵՂԵՎ, գլխուղեղի գորշ նյութի (հաստ.՝ 1–5 *մմ*) շերտ, որը ծածկում է կաթնասունների և մարդու գլխուղեղի մեծ կիսագնդերը, ԿՆՀ–ի բարձրագույն բաժինը, որը կարգավորում և համաձայնեցնում է օրգանիզմի բոլոր կենս. կարևոր ֆունկցիաները՝ արտաքին միջավայրի հետ փոխներգործության ժամանակ: Մ. կ. կ. բարձրագույն նյարդ. գործունեության նյութ. հիմքն է (չնայած այդ գործունեությունը գլխուղեղի՝ որպես մեկ ամբողջության աշխ–ի արդյունքն է): Մարդու Մ. կ. կ. կազմում է կիսագնդերի ծավալի 40 %–ը, իսկ նրա մակերևույթը մինչև 1670 *սմ*^{2} է:

ՄԵԾ ԿՈՎԿԱՍ, լեռն. համակարգ Սև և Կասպից ծովերի միջև: Երկ.՝ 1100 *կմ*, լայն.՝ մոտ 180 *կմ*, տարածքը՝ մոտ 145 հզ. *կմ*^{2}: Առանցք. գոտում լավ արտահայտված են Ջրբաժան և Կողքային լ–շղթաները: Բաժանվում է Արմ. (մինչև Էլբրուս, 5642 *մ*), Կենտր. (մինչև Կազբեկ, 5033 *մ*) և Արլ. (Կազբեկից արլ.) մասերի: Ժամանակակից սառցակալումը մոտ 1426 *կմ*^{2} է:

ՄԵԾ ԿՈՒՔՆՔ, **Մեծկվենք, Մեծ Կուանք**, գվո *Արցախ* նահանգ–ում: Ընդգրկել է Սև ջուր գետի հովիտը և Թարթառի (Տրտու) միջին ավազանը (այժմ՝ ԼՂՀ Շահումյանի շրջանը, Մարտակերտի արլ. մասը):

ՄԵԾ ՀԱՅՔ (լատ.՝ Armenia Major, Armenia Magna), Հայաստանի կամ *Հայկական լեռնաշխարհի* մեծագույն և բուն մասի անվանումը՝ ի տարբերություն նրա արմ. (անդրեփրատյան) տարածքի՝ *Փոքր Հայքի*: Առաջացել է հայկ. հնագույն և միասն. պետության տրոհման հետևանքով: Մ. թ. ա. I դ–ի 80–70–ական թթ–ին դարձել է աշխարհակալ տերություն: *Արտաշատի պայմանագրով* (մ. թ. ա. 66)՝ Մ. Հ–ի սահմաններ են ճանաչվել արմ–ում՝ Եփրատ գետը, հս–ում՝ Թրիալեթի լ–շղթան և Կուր գետը, հս–արլ–ում՝ Կուր գետը (որով բաժանվել է Վիրքից և Աղվանքից), արլ–ում՝ Կասպից ծովը, հվ–արլ–ում՝ Հայկ. և Կասպիական լ–ները, հվ–ում սահմանակից էր *Ադիաբենեին*, հվ–արլ–ում՝ *Օսրոյենեին*: Տարածքը՝ 316 հզ. *կմ*^{2}: 387–ին Մ. Հ–ի Միջնաշխարհի արլ. մասն անցել է Սասանյաններին, իսկ արմ. մասը՝ Հռոմ. (Բյուզ.) կայսրությանը: Հետագա դարերում չի ստեղծվել ամբողջ Մ. Հ. ընդգրկող հայկ. միասն. պետություն (Բագրատունիները, Զաքարյանները մասամբ են վերականգնել Մ. Հ–ի տարածքը): Մ. Հ–ի հս–արլ–ում ստեղծվել են ՀՀ–ն և ԼՂՀ–ն:

ՄԵԾ ՀԱՐԹԱՎԱՅՐԵՐ, նախալեռն. սարահարթ: Եզրավորում է Արլ. Կորդիլիերներն ԱՄՆ–ում և Կանադայում: Երկ.՝ 3600 *կմ*, լայն.՝ 500–800 *կմ*, բարձր.՝ 500–1700 *մ*: Կան նավթի, գազի, գորշ ածխի, կալիում. աղի հանքավայրեր: Լանդշաֆտը՝ տափաստաններ, կիսաանապատներ:

ՄԵԾ (ԲԱՐՁՐ) ՀԻՄԱԼԱՅՆԵՐ, *Հիմալայների* ամենաբարձր հատվածը (մինչև 8848 *մ*, Ջոմոլունգմա):

ՄԵԾ ՁԿՆԿՈՒԼ (Phalacroecorax carbo), *ձկնկուլների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 80–100, թևերի բացվածքը՝ 130–180 *սմ*, կ. զ.՝ 1,8–3 *կգ*: Ձկնաբուծությանը խիստ վնասող տեսակ է: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՄԵԾ ՃԱՀՃԱՀՈՎՎԻԿ (Porzana porzana), *ջրահովվիկների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է, հազվագյուտ: Մարմնի երկ.՝ 22–24, թևերի բացվածքը՝ 37–42 *սմ*: Թաքնվող թռչուն է: Ապրում է ճահճուտներում, դանդաղահոս գետակներում: Մնվում է ջր. միջատներով, բույսերով: ՀՀ–ում վերջին գրանցումները կատարվել են 1990–ին:

ՄԵԾ ՃՈՒԿԱԿ (Buteo bateo), *ճուռակների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է, տարածված: Մարմնի երկ.՝ 51–57, թևերի բացվածքը՝ 113–128 *սմ*, կ. զ.՝ 0,5–1,2 *կգ*: Լայն թևերով գիշատիչ թռչուն է: Մնվում է կրծողներով, այլ մանր կենդանիներով, միջատներով, լեշերով: Օգտակար է. ոչնչացնում է մանր կրծողներին:

«ՄԵԾ ՄԱՀԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» («Big Stick Policy»), բնորոշում, որն օգտագործվել է XX դ–ի սկզբին Լատ. Ամերիկայում ԱՄՆ–ի բացահայտ միջամտող. քաղ–յունը բնութագրելու համար: «Մ. մ. ք.»–յան նպատակը Արմ. կիսագնդում ԱՄՆ–ի լրիվ տնտ. ու քաղ. գերիշխանության հասնելն էր, եվրոպ. երկրների առևտրատնտ. էքսպանսիան առավելագույնս սահմանափակելը:

ՄԵԾ ՄԵՆԴԵՐԵՍ, գետ Թուրքիայի արմ–ում: Երկ.՝ 380 *կմ*: Սկիզբ է առնում Անատոլ. սարահարթից, թափվում Էգեյան ծով: Մ. Մ–ի հին անվանումը՝ Մեանդրոսը, դարձել է գետ. գալար ցույց տվող հասարակ անուն (ստորին հոսանքում գետը խիստ գալարուն է):

ՄԵԾ ՄՈՂՈԼՆԵՐ, *Մողոլական կայսրության* տիրակալների հարստություն՝ 1526–1858–ին (Հնդկաստան): Հիմնադրել է Կենտր. Ասիայից՝ Մողոլստանից եկած *Բաբուրը* (այստեղից էլ՝ անվանումը): Երևելի ներկայացուցիչներն են *Աքբարը*, Ջահանգիրը, *Շահ Ջահանը*, *Աուրենգզեբը*:1803–ին անգլիացիները զավթել են Դելին. Մ. մ. ձևականորեն համարվել են Հնդկաստանի կառավարիչներ:

ՄԵԾ ՆՅՈՒՖԱՈՒՆԴԼԵՆԴՅԱՆ ԾԱՆԾԱՂՈՒՏ, ընդարձակ առափնյա ծանծաղուտ Ատլանտ. օվկ–ում՝ *Նյուֆաունդլենդ* կղզու մոտ: Առլզն խոր.՝ 100 (նվզգն՝ 5,5) *մ*: Աշխարհում ամենախոշոր ձկնորս. շրջանն է (սելդ, ձողաձուկ ևն):

ՄԵԾ ՆՈՎԳՈՐՈԴ (1999–ից, մինչ այդ՝ Նովգորոդ), ք. ՌԴ–ում, Նովգորոդի մարզի վարչ. կենտրոնը (1944–ից), նավակայան Վոլխով գետի ափին՝ Իլմեն լճից 6 *կմ* հեռու: Բն.՝ 220 հզ. (2013): Երկաթգ. կայարան է: Հայտնի է 859–ից: 1136–1478–ին եղել է Նովգորոդի հանրապետության

մայրաքաղաքը: Պահպանվել են ճարտ. բազմաթիվ հուշարձաններ, որոնցից նշանավոր են Նովգորոդյան կրեմլը («Դետինեց», 1044)՝ քարե պարիսպներով (1302–1420, վերակառուցվել է 1484–90-ին), Սոֆիայի տաճարով (1045–50), «Գրանովիտոյա պալատով» (1433), Ներեդիցեի Սպաս եկեղեցին (1198), վանքերը ևն: Բոլոր պատմ. հուշարձանները ներառված են Համաշխ. մշակույթի ժառանգության ցանկում:

ՄԵԾ ՇՈՒՆ (լատ.՝ Conis Major), Հվ. Կիսագնդի համաստեղություն՝ Միաեղջյուր, Նավախել, Աղավնի, Նապաստակ համաստեղությունների միջև: Մ. Շ-ի մեջ է *Սիրիոսը*՝ երկնքի ամենապայծառ աստղը: Տես նաև *Մեծ Արջ*:

ՄԵԾ ՉՈՒԿՈՉՅԱ, գետ ՌԴ Յակուտիայի հս-արլ-ում: Երկ.՝ 758 *կմ*, ավազանը՝ 19,8 հզ. *կմ*²: Սկիզբ է առնում Ուսան Կյուել լճից, թափվում Արլ-սիբիր. ծով: Ձմռանը սառչում է: Ավազանում կան ավելի քան 11,5 հզ. լճեր:

ՄԵԾ ՊԱՅԹՅՈՒՆ, *Տիեզերքի* ընդարձակման սկզբն. փուլը: Մ. պ-ի սկզբում (մոտ 13,5 մլրդ տարի առաջ) Տիեզերքի միջին խտությունը վիթխարի թվով անգամներ գերազանցում էր նրա ներկա խտությունը: Այդ ժամանակաշրջանում Տիեզերքի նյութը ձեռք է բերել վիթխարի հարաբեր. արագություններ: Համաձայն արդի պատկերացումների՝ Տիեզերքի ընդարձակումը հարուցող նախն. հարվածի (վանման) պատճառը վաղ Տիեզերքում գերակայող սկալյար դաշտն էր: Մատերիայի այդ տեսակի յուրահատկությունն անսահման մեծ բացաս. ճնշում ունենալն է, որը հանգեցրել է գրավիտացիոն հարվածին: Սկալյար դաշտի գերակայման ժամանակն ընդարձակման սկզբից առաջ 10^{-35} *վ* էր: Այդ ժամանակից ցայսօր Տիեզերքն ընդարձակվում է իներցիայով: Մ. պ-ի դիտվող վկայություններն են մնացորդ. ճառագայթումը, ջրածնի, հելիումի և մի քանի այլ թեթև քիմ. տարրերի արժեքները, Տիեզերքում բաշխված անհամասեռությունները (օր.՝ գալակտիկաները) ևն:

ՄԵԾ ՊԱՅՏԱՔԻԹ ՉՂՋԻԿ (Rhinolophus ferrumequinum), պայտաքիթ չղջիկների ընտանիքի կաթնասուն կենդանի: ՀՀ-ում հանդիպող պայտաքիթ չղջիկներից ամենախոշորն ու ամենատարածվածն է (հանդիպում է բոլոր մարզերում): Ապրում է առանձնյակներով, խմբերով և հսկա գաղութներով (35–40 հզ. չղջիկ): Մարմնի երկ.՝ մինչև 77, պոչինը՝ 43 *մմ*: Մնվում է միջին ու մեծ չափերի գիշեր. բզեզներով, թիթեռներով:

ՄԵԾ ՋՐԱՆՑՔ, նավարկելի ջրանցք Չինաստանում: Կարևորագույն հաղորդակցության միջոց է. միացնում է 2 խոշոր նվինգստ-ներ՝ Տյանցզին և Շանհայը: Երկ.՝ 1782 *մ*: Ջրանցքի շին-յունն ավարտվել է XIII դ-ում՝ VII դ-ում կառուցված ջրանցքների հիմքի վրա:

ՄԵԾ ՋՐԲԱԺԱՆ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Արևելաավստրալիական լեռներ, լեռն. համակարգ: Զգվում է Ավստրալիայի արլ. և հվ-արլ. ափով մոտ 4 հզ. *կմ*: Հվ. լայնյան 28º-ից հս բաղկացած է մոտ 1000 *մ* բարձր-յան զանգվածներից, սարահարթերից ու գոգավորություններից, դեպի հվ՝ առանձին զանգվածներից մինչև 2230 *մ* բարձր-յամբ Կոսցյուշկո լ.: Մ. ջ. լ-ի լանջերից սկիզբ են առնում Մուրեյ և Դաուլինգ գետերը: Արլ. լանջերը ծածկված են խոնավ տերևաթափ մշտադալար անտառներով, արմ. լանջերը՝ անտառասավաննաներով ևն:

ՄԵԾ ՍՂՈՑԱԿՏՈՒՅ ԲԱՂ (Mergus merganser), *բադերի* ընտանիքի թռչուն: Նստակյաց է, հազվագյուտ: Մարմնի երկ.՝ 58–65, թևերի բացվածքը՝ 82–97 *սմ*, կ. զ.՝ 1,1–2 *կգ*: Սովորաբար հանդիպում են փոքր երամներով: Ապրում է ժայռոտ կամ մանրախճոտ ափերով լճերում: Մնվում է ձկներով, խխունջներով, միջատներով, երկկենցաղներով: Մինչև 1940-ական թթ. գրանցվել է որպես նստակյաց թռչուն: Հետագայում Սևանա լճում, Հրազդանի ձորում և այլուր բնադրատեղիների կորստի ու թվաքանակի խիստ կրճատման հետևանքով ՀՀ-ում գրանցվել են միայն գարնան., աշնան. չուերի ընթացքում:

ՄԵԾ ՍՈՒՋԱԿ (Podicepa cristatus), *սուզակների* ընտանիքի ջրլող թռչուն: Նստակյաց է: Մարմնի երկ.՝ 46–51, թևերի բացվածքը՝ 80–85 *սմ*, կ. զ.՝ 0,5–1,5 *կգ*: Վիզը երկար է, բարակ, կտուցը՝ երկար, վարդագույն: Անթերի լողորդ է, առիթի դեպքում կարող է սուզվել ջրի ամենախորը շերտերը: Ապրում է լճերում, ձկնաբուծ. լճակներում, ջրամբարներում, ճահճուտներում: Մնվում է մանր ձկներով, ջր. անողնաշարներով, բույսերով:

ՄԵԾ ՈՒՋԵՆ, գետ ՌԴ Սարատովի և Ղազախստանի Ուրալյան մարզերում: Երկ.՝ 650 *կմ*, ավազանը՝ 15,6 հզ. *կմ*², ջրի միջին ծախսը Նովոկուզնեցկի մոտ՝ 6,7 *մ*³/*վ*: Թափվում է Սամարյան Կամիշ անհոսք լիճը:

«ՄԵԾ ՈՒԹՆՅԱԿ», *ութի խումբ* (անգլ.՝ Group of Eight, G 8), միջազգ. ակումբ, որը միավորում է աշխարհի արդյունաբերապես առավել զարգացած երկրներին՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա, Կանադա ու Ռուսաստան: Ձևավորվել է 1990-ական թթ-ի կեսերին՝ «Մեծ յոթնյակին» Ռուսաստանի անդամակցումից հետո: Կոչվում է նաև այդ երկրների առաջնորդների ոչ պաշտոն. ֆորում:

ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱՀԱՄԱԿԱՐԳ, ընտր. համակարգ միամանդատ օկրուգներում: Ունի 2 ենթատեսակ՝ բացարձակ (50 % + 1 քվե) և հարաբեր. (առավել քվեների թվով): ՀՀ Սահմանադրության վերջին (2016) փոփոխություններով Մ. ը. հանվել է, անցում է կատարվել 100-%-անոց և համամասնական ընտրահամակարգի:

ՄԵԾԱՄՈՐ, լիճ ՀՀ Արմավիրի մարզում՝ Արարատյան դաշտի հս-ում՝ 860 *մ* բարձր-յան վրա: Մակերեսը՝ 0,03 *կմ*², առլցն խոր.՝ 9,4 *մ*, ջրհավաք ավազանը՝ 5 *կմ*², ջրի ծավալը՝ 310 հզ. *մ*³: Հս. ափին կառուցված է ջրհան կայան:

ՄԵԾԱՄՈՐ, Սև ջուր, գետ ՀՀ Արմավիրի մարզում, Արաքսի ձախ վտակը: Սկիզբ է առնում Մեծամոր լճից: Երկ.՝ 38 *կմ*, ավազանը՝ 480 *կմ*², ջրի միջին ծախսը՝ 33,9 *մ*³/*վ* (Ռանչպար գ.): Խոշոր վտակը Քասաղն է:

ՄԵԾԱՄՈՐ, հնագույն ամրոց-քաղաքատեղի, *Մեծամոր* գետի ակունքների մոտ՝ ՀՀ Արմավիրի մարզի Տարոնիկ գ-ից ոչ հեռու՝ Երևանից մոտ 30 *կմ* արմ.: 1965-ից պարբերաբար պեղումներ է կատարում ՀՀ ԳԱԱ արշավախումբը: Բնակատեղին (տարածքը՝ 30 *հա*) վերաբերում է մարդաառաջացման միջին շրջանին, պեղված մշակութ. շերտերը՝ պղնձի-քարի, բրոնզի, երկաթի դարաշրջաններին, վաղ և ուշ միջնադարին:

ՄԵԾԱՏՈՒՐՅԱՆ Կարապետ Միհրանի (1909–1966), քանդ.: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1960): Ստեղծագործել է հաստոց., մոնումենտալ և դեկորատիվ քանդ-յան բնագավառներում: Հեղինակ է «Պարող աղջիկներ» շատրվանի (Ջերմուկ), Երևանի կենտր. շուկայի (Մաշտոցի պողոտա) գլխ. մուտքի զարդաքանդակների (1952), Ա. Բեքարյանի (1952), Խ. Եսայանի (1963) դիմաքանդակների և այլ գործերի:

ՄԵԾԱԲԵՆՑ (Մեծատուրյան) Միսաք Կարապետի (1886–1908), բանաստեղծ: Հեղինակ է չափածո և արձակ բանաստեղծությունների («Ծիածան», «Նոր տաղեր», երկուսն էլ՝ 1907, ժող-ներ), գրաքննադատ. հոդվածների («Ինքնաքննադատության փորձ մը», «Նարեկացիին հետ»): Երգել է բնություն, սեր («Ինչ արբեցությամբ...», «Սիրերգ», «Արևին», «Ձմռան պարզ գիշեր», «Աքասիաներու շուքին տակ»), «անանձնական ուրախություն» («Տո՛ւր ինձի, Տե՛ր...», «Ըլլայի, ըլլայի», շարք), գյուղ. պատկերներ («Ջրտուք», «Որթին տերևը», «Տկճորին երգը»): Մ. արևմտահայ պոեզիայում կատարելության է հասցրել բանաստեղծության կառուցման ձևերը: Թարգմանել է եվրոպացի և ռուս հեղինակների չափածո և արձակ գործերից:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂԱԹԵՂԱԿԱՆ ԴՊՐԵՎԱՆՔ, հոգևոր ուս. հաստատություն: Հիմնադրվել է 1930-ին Անթիլիասում՝ *Սահակ Բ Խապայանի* ջանքերով՝ նախապատրաստ., քառամյա ժառանգավորաց, եռամյա ընծայարանի, նաև ամուսնացյալ քահանայության թեկնածուների բաժիններով: 1978-ից գործում է Բիկֆայա գ-ում: Սովորել են ուսանողներ Լիբանանից, Սիրիայից, Իրանից և սփյուռքահայ այլ համայնքներից: Շրջանավարտներից շուրջ 80-ը դարձել են վրդ-ներ, 30-ը՝ եպս-ներ և արք-ներ: Դպրեվանքի հայտնի սաներից են Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսը, Մեծի Տանն Կիլիկիո Զարեհ Ա, Խորեն Ա, Արամ Ա կաթողիկոսները: 1956-ից լույս է ընծայում *«Գլաձոր»* տարեգիրքը:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ Գալուստ Կյուլբենկյանի անվան, հիմնադրվել է 1932-ին Անթիլիասում՝ Կիլիկիո կաթողիկոս *Սահակ Բ Խապայանի* և աթոռակից կաթողիկոս Բաբկեն *Կյուլեսերյանի* նախաձեռնությամբ: Ցայսօր լույս է ընծայել շուրջ 1200 անուն գիրք՝ կրոնաեկեղեց., աստվածաբան., հայագիտ. աշխ-ներ, բառարաններ, հայ դաս. և ժամանակակից (արևելահայ և արևմտահայ) հեղինակների գործեր, բուհ. դասագրքեր, նաև մատենագիտ., երաժշտագիտ., թարգմ. գրկ., օրացույցներ, հուշատետրեր, ինչպես նաև ՄՏԿԿ պաշտոն. *«Հասկ»* (1932-ից) ամսագիրը, *«Հասկ հայագիտական տարեգիրք»*-ը (1948–50 և 1980–2003), 1961–99-ին՝ *«Դրազարկ»* պարբերաթերթը:

ՄԵԾՆ ՄՈՒՐԱԴ, տես *Պոյաջյան* Համբարձում:

ՄԵԾՆՈՒՆՔ, գվո *Վասպուրական* նահանգում՝ Մարմետ գետի միջին ավազանում: Միջին դարերում մտել է Վասպուրականի Արծրունյաց իշխանության (908-ից՝ թագավորություն) կազմի մեջ: *Վասպուրականի թագավորության* անկումից (1021) հետո ենթարկվել է վաչկատուն ցեղերի գերիշխանությանը: 1502-ից՝ Սեֆյան Իրանի կազմում:

ՄԵԾՈՓԱՎԱՆՔ, **Սուրբ Աստվածածնի վանք**, ճարտ. համալիր Տուրուբերան նահգ–ի Աղիովիտ գվո–ում՝ Ականց (Արճեշ) գք–ից մոտ 14 *կմ* հս–արմ. (անվանումը՝ Մեծոփ լճակից): Աստվածատուր Արճիշեցու կառուցած Սբ Աստվածածին եկեղեցու արլ.՝ 2 մատուռներից մեկը 1201–ին Սբ Հակոբ է կոչվել: ***Հովհաննես Մեծոփեցին*** 1402–ին վերակառուցել է վանքը: XVII դ–ից հիշատակվում է միայն մտնդ–ը (կողոպտվել է 1895–ին), պահպանված 100 ձեռագիր 1915–ին անցել է քրդերի ձեռքը:

ՄԵԾՈՓԱՎԱՆՔԻ ԴՊՐՈՑ, գործել է XII դ–ի վերջերից ***Մեծոփավանքում***: XIII դ–ի վերջին դպրոցը ղեկավարել է ***Միսիթար Սասնեցին*** (մինչև 1337–ը)՝ ***Հովհաննես Արճիշեցու*** համագործակցությամբ, XIV դ–ի վերջին՝ ***Հովհաննես Մեծոփեցին***: 1408–ին ***Գրիգոր Տաթևացին*** Մեծոփավանքում հիմնադրել է բարձր տիպի դպրոց, որտեղ ավելի ուշ բարունակներ եղել ***Գրիգոր Խլաթեցին*** և ***Թովմա Մեծոփեցին***, դասասաց վրդ–ներից՝ ***Հակոբ Ղրիմեցին***: Դպրոցում ստեղծվել են մատենագր. բազմաթիվ երկեր, ընդօրինակվել ձեռագրեր, ծաղկել են գրչարվ–ն ու մանրանկարչության արվ–ը: Սաներից հայտնի են 22 ընտիր գրիչներ, որոնց թվում՝ ***Հովհաննես Սանկասարնեցը*** (նրանցից մեզ են հասել 200 ձեռագիր), մանրանկարիչներից՝ ***Մինաս***, Կարապետ Բերկրեցին, Կարապետ Աղթամարցին, Հայրապետ կազմողը: XVI դ–ում վանքն այրվել է: XVII դ–ում հիշվում է միայն վանքի մտնդ–ը, որը կողոպտվել է 1895–ին: Պահպանված 100 ձեռագրերը 1915–ին ընկել են քրդերի ձեռքը:

ՄԵԾՐԱՅ ԼԵՌՆԵՐ, տեկտոնահիրաբխ. լ–զանգված Հայկ. լ–աշխարհում՝ Ներքին Տավրոսի հս. մասում՝ Օլթի և Կարս գետերի միջև: Երկ.՝ 80 *կմ*, առլգն բարձր.՝ 2885 *մ* (Մեծրաց լ.): Լանջերը մասնատված են Արաքսի վտակների հովիտներով:

ՄԵԾՈՒԹՅՈՒՆ, 1. որոշակի հասկացությունների՝ երկ–յան, մակերեսի, զանգվածի ևնի ընդհանրացումը, որոնք կարելի է չափել, հաշվել, համեմատել: Տվյալ տեսակի Մ–ներից մեկն ընտրելով որպես չափի միավոր՝ նույն տեսակի ցանկացած այլ Մ. կարելի է արտահայտել թվի տեսքով՝ որպես այդ մեծության և միավորի հարաբերություն: 2. Ավելի ընդհ. իմաստով՝ սկալյար Մ. կամ ***սկալյար*** կոչվում է այն օբյեկտը, որն ամբողջությամբ բնութագրվում է տրված մի թվով: Սկալյար Մ–ների ընդհանրացումը վեկտորական (տես ***Վեկտոր***), տենզորական (տես ***Տենզոր***) Մ–ներն են:

ՄԵԿԵՆԱՍ (Maecenas) Գայոս Կիլինիոս (մ. թ. ա. 74–64–ի միջև–մ. թ. 8), հռոմեացի պետ. գործիչ, ***Օգոստոս*** կայսեր մերձավորը, միապետության կողմնակից: Մտերիմ է եղել ***Հորացիոսի***, ***Վերգիլիոսի***, ***Պրոպերտիոսի*** և ուր. հետ: Հովանավորել ու պաշտպանել է նրանց, որի համար նրա անունը, որպես գիտ–յան ու արվ–ի գործիչների հովանավորի, դարձել է հասարակ անուն:

ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՇԱՐԺԻՉ, հրթիռ. շարժիչ, որը թռիչքի առաջին պահին շարժում է հաղորդում արկին կամ տիեզերանավին, որից հետո անջատվում է նրանից՝ նվազեցնելով սարքի սեփ. զանգվածը: Էներգիայի լրացուցիչ քանակ ապահովելու համար թռիչքի ժամանակ կիրառվում է մի քանի այդպիսի շարժիչ:

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ, վերլուծ. բացատրություն կամ մեկնաբանություն: Սկզբնավորվել է Հին Հունաստանում, երբ փիլ–ները մեկնել են կրոն. առասպելները: Սկզբնավորվել է նաև մեկնող. գրկ–յան ժանրը: V դ–ում Սահակ Պարթևն ու Եզնիկ Կողբացին թարգմանել են Սբ Գրքի մի շարք Մ–ներ, մեկնել են նաև գիտ. գրքեր (Դիոնիսոս Թրակացու «Քերականական արվեստ», Արիստոտելի «Կատեգորիաներ», ևն), գեղ. ստեղծագործություններ (Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» ևն): Հայ հեղինակները նույնպես գրել են Մ–ներ (եղիշեի «Արարածոց մեկնութիւն», Ստեփանոս Սյունեցու «Մեկնութիւն չորից Աւետարանացն» ևն): VII–VIII դդ–ից հետո որևէ երկ մեկնելիս հաճախ քաղվածաբար օգտագործել են հեղինակավոր գործիչների Մ–ները: Հայ գրկ–ը հարուստ է թարգմ. և ինքնուրույն Մ–ներով, որոնց մեջ մտնում են նաև լուծմունքների և հարց ու պատասխանի ձևով գրված բացատրություններ:

ՄԵԿՈՆԳ, գետ Չինաստանում, Մյանմայում, Լաոսում, Թաիլանդում, Կամբոջայում և Վիետնամում: Հնդկաչին թ–կղզու ամենամեծ գետն է: Երկ.՝ մոտ 4500 *կմ*, ավազանը՝ 810 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 14 հզ. *մ³/վ* (վարարման շրջանում՝ մինչև 30 հզ. *մ³/վ*): Սկիզբ է առնում Տիբեթի բարձրավանդակից, հատում է Կամբոջայական հարթավայրը և թափվում Հվ–չին. ծով՝ ստեղծելով 46,7 հզ. *կմ²* մակերեսով դելտա: Խոշոր վտակները՝ Մուն, Տոնլեսապ, Թհեն, Սան: Մնումն անձրևային և ձնասառցադաշտային է: Հորդանում է ամռանն ու աշնանը: Նավարկելի է 700 *կմ*, վարարումների ժամանակ՝ մինչև 1600 *կմ*: Ծով. նավերը բարձրանում են 350 *կմ* (մինչև Պնոմպեն ք.): Ափերին են Լուանգպրաբանգ, Վիենտյան, Պնոմպեն ք–ները:

ՄԵԿՈՒՍԱՅՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳ, ***փակ համակարգ***, շրջապատող միջավայրից ադիաբատ մեկուսացված թերմոդինամիկ. համակարգ, ինչին հասնում են համակարգը շրջափակելով ադիաբատ թաղանթով (օր.՝ ***Դյուարի անոթը***), որը բացառում է շրջապատող միջավայրի հետ ջերմության և նյութի փոխանակումը: Մ. հ–ի ներքին էներգիայի փոփոխությունը հավասար է կատարված աշխ–ին: Մ. հ–ում տեղի ունեցող յուրաքանչյուր շարժընթաց ադիաբադ է: Ի տարբերություն բաց համակարգի՝ Մ. հ–ում միշտ հաստատվում է թերմոդինամիկ. հավասարակշռված վիճակ:

ՄԵԿՈՒՍԱՅՐԱԾ ՕՐԳԱՆՆԵՐ, մարմնի կամ խոռոչի օրգանի՝ օրգանիզմից անջատած և արհեստ. սննդ. միջավայրում տեղադրած մասեր (մկան, երիկամ, սիրտ, վերջույթ ևն), որոնք ժամանակավորապես պահպանում են հիմն. ֆունկցիոնալ առանձնահատկությունները: Օգտագործվում են ֆիզիոլոգ., կենսբ. և ախտաբան. փորձերի համար: Մարդու Մ. օ. (դոնորից կամ դիակից վերցրած) օգտագործում են փոխպատվաստման նպատակով:

ՄԵԿՈՒՍԻՉ, 1. մեծ տեսակարար էլ. դիմադրությամբ նյութ (դիէլեկտրիկ): 2. Սարք, որը կանխարգելում է էլ. հկման առաջացումը և շատ դեպքերում նաև ապահովում էլեկտրասարքավորման տարրեր էլ. պոտենցիալներով օժտված մասերի մեխ. կապը: Պատրաստում են դիէլեկտրիկներից (էլեկտրատեխ. ճենապակիներ, ապակիներ, պոլիմեր. նյութեր)՝ սկավառակների, գլանների և այլ մարմինների ձևով:

ՄԵԿՈՒՍԻՉ ՅՈՒՂԵՐ, **էլեկտրամեկուսիչ հեղուկներ**, բարձրամաքուր նավթի, հազվադեպ՝ սինթետիկ (օր.՝ սիլիցիումօրգ.) յուղեր: Օգտագործում են էլեկտրատեխ. սարքերում՝ որպես էլեկտրամեկուսիչներ և ջերմահեռացնող միջավայրեր: Տարբերում են տրանսֆորմատոր., կոնդեսատոր. և մալուխ. յուղեր:

«ՄԵՀԵԱՆ», գրկ–յան և արվ–ի հանդես (1914, Կ. Պոլիս): Արևմտահայ իրականության մեջ 1910–ական թթ–ին ծագած հեթանոս. գր. շարժման ներկայացուցիչների հրտ–յուն: Տնօրեն–խմբ.՝ Կոստան Զարյան, խմբ–ներ՝ Գեղամ Բարսեղյան, Հակոբ Օշական:

ՄԵՀԵԼԻԻ ՊԱՅՏԱՔԻԹ ՉՂՋԻԿ (Rhinoloplus mehelyi), **ակնոցավոր կամ ռումինական պայտաքիթ չղջիկ**, պայտաքիթ չղջիկների ընտանիքի կաթնասուն կենդանի: Մարմնի երկ.՝ 50–65, պոչինը՝ 24–32, նախաբազկինը՝ 50–55 *մմ*, կ. զ.՝ մինչև 8 *գ*: Մնվում է ուղղաթևավորներով, երկթևանիներով, թիթեռներով և գիշեր. բզեզներով: ՀՀ–ում հանդիպում է Երևանի շրջակայքում և հվ. մարզերի քարանձավներում, հաճախ՝ այլ ընտանիքների չղջիկների հետ նույն թաքստոցում: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՄԵՀԵՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ, հեթանոս. Հայաստանում գործող գրադարաններ մեհյաններում կամ կից շինություններում: Եղել են 2 տիպի՝ թագավոր., որտեղ պահվել են արքուն. դիվանի փաստաթղթերը, և տաճար. (մեհեն.)՝ կրոն., պատմ. և այլ բնույթի գրկ–յամբ: Չի բացառվում, որ հուն., պհլ., արամերեն գրքերից զատ, եղել են նաև ***մնեհենագիր*** հայ–ով շարադրված նյութեր:

ՄԵՀՄԵՏ ԷՄԻՆ (Mehmet Emin, կեղծանունը՝ Յուրդակուլ, 1869–1944), թուրք բանաստեղծ: Պանթյուրքիզմի գաղափարախոսներից: «Թուրքական բանաստեղծություններ» (1898) ժող–ում նկարագրել է ժող. պոեզիայի հետ կապը, գյուղաց. կյանքը: «Հե՛յ, թու՛րք, արթնացի՛ր» (1914) ժող–ում առկա են ազգայնական միտումներ:

ՄԵՀՅԱՆ, հեթանոս. տաճար, որտեղ դրվել են հեթանոս. որևէ աստվածության արձան և զոհասեղան (բագին): Հին Հայաստանում կառուցվել են հեթանոս. դիցարանի աստվածներին (Արամազդ, Անահիտ, Աստղիկ, Վահագն, Միհր, Նանե, Տիր) նվիրված Մ–ներ, որոնք ավերվել են քրիստոնեության ընդունումից (301) հետո (պահպանվել է միայն Գառնիի հունա–հռոմ. տիպի հեթանոս. տաճար–Մ.):

ՄԵՀՐԱԲՅԱՆ Անդրանիկ Համբարձումի (1904–1986), հոգեբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1941), պրոֆ. (1942): ԽՍՀՄ ԲԳԱ թղթ. անդամ (1961): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): Հայաստանում հոգեբուժության հիմնադիրներից: Նկարագրել է ապաանհատականացման (դեպերսոնալացում) առանձնահատկությունները բոլոր հոգեկան հիվանդությունների ժամանակ: Զբաղվել է նաև շիզոֆրենիայի, էպիլեպսիայի, ալկոհոլամոլության հարցերով:

ՀԽՍՀ նյարդախտաբանների, հոգեբույժների և նյարդավիրաբույժների ընկ–յան նախագահ (1944–86), ՀԽՍՀ ԱՆ գլխ. հոգեբույժ (1965–83):

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան:

ՄԵՀՐԱԲՅԱՆ (Մեհրաբով) Բորիս Հակոբի (1870–1936), ճարտ.: 1906–11–ին կազմել

է Երևանի մանրամասն հատակագիծը, որն օգտագործվել է 1924–ին հաստատված Ալեքսանդր *Թամանյանի* առաջին գլխ. հատակագիծն ստեղծելիս: Մ–ի նախագծերով կառուցվել են Տաճարային (այժմ՝ Շահումյանի անվ.) հրապարակի Քաղաք. դումայի և վարչության (1907), քաղաք. ոստիկանության (1908), Թիֆլիսի առևտր. բանկի Երևանի բաժանմունքի (1910) շենքերը ևն:

ՄԵՀՐԱԲՅԱՆ Ռաֆիկ Հմայակի (ծ. 1938), մարզիչ: ԽՍՀՄ ս. վ. (1969): ՀՀ (1965), ԽՍՀՄ (1989) ս. վ. մ.: 1972–92–ին՝ ԽՍՀՄ և Հայաստանի բռնցքամարտի հավաքականների ավագ մարզիչ, 1996–2000–ին՝ Հունաստանի բռնցքամարտի օլիմպ. հավաքականի ավագ մարզիչ: 2002–13–ին՝ Հայաստանի բռնցքամարտի ազգ. հավաքականի գլխ. մարզիչ:

ՄԵՀՐԱԲՅԱՆ Ռաֆիկ Մաթևոսի (ծ. 1961), օդաչու, «Մի–8» ուղղաթիռի հրամ.: Մասնակցել է ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ շրջանների պաշտպ–յանն ու մարտ. գործողություններին:

ԼՂՀ «Մարտական խաչ» 1–ին աստիճանի շքանշան (2004), ԼՂՀ (1998) և ՀՀ (1999) «Արիության համար» մեդալներ, ՀՀ վարչապետի հուշամեդալ (2009):

ՄԵՀՐԱԲՅԱՆ Սերժ Վահանի (1931–2015), քանդ.: Հեղինակ է մոնումենտալ հուշարձանների («Վերածնունդ», 1969, Իջևան, «Հայրենական պատերազմում զոհված զինվորների հիշատակին», 1974, Դիլիջան, «Դավիթ Անհաղթ», 1985, «Գրիգոր Նարեկացի», 2002, «Տիրամայր», 2004, երեքն էլ՝ Երևան):

ՄԵՂԱՎՈՐՅԱՆ Հակոբ (1856–1931), իրավաբան, մանկավարժ: Իրավագիտ. դ–ր (1894): ՍԴՀԿ Տրապիզոնի կազմ–յան հիմնադիրներից: Սուլթանության դեմ պայքարի համար դատապարտվել է 101 տարվա տաժանակրության: 1890–ին փախել է աքսորից, հաստատվել Լոզանում (Ֆրանսիա): 1922–28–ին՝ Տրապիզոնի խորհրդ. հյուպատոսության աշխատակից:

ՄԵՂԵԴԻ, հիմն. երաժշտ. միտք արտահայտող մեկնաբանի լադային–ինտոնացիոն, ռիթմ. կառուցվածք, երաժշտության կարևոր սկզբնատարր, երաժշտ. մտքի, զգացափարահուզ. բովանդակության կրողը: Ընդգրկում է երաժշտ. լեզվի գրեթե բոլոր արտահայտչամիջոցները (հնչյուն, բարձրություն, մետր, ուժգնություն, տեմբր ևն):

ՄԵՂԵՄԻԿ, միներալ, կվարցի թափանցիկ մանուշակագույն տարատեսակը: Խոշոր, գեղեցիկ գունավորմամբ բյուրեղներ են: Թանկարժեք քար է: Արտադրում են նաև արհեստ. Մ.: Օգտագործվում է ոսկերչության մեջ:

ՄԵՂՄԱՍՈՒԹՅՈՒՆ, **էվֆեմիզմ** (հուն.՝ evphemia – հրաժարում անհարգի խոսքերից), անուղղակի, նուրբ արտահայտություն՝ կտրուկ (օր.՝ պարարտ՝ չաղի փոխարեն) կամ քաղաքավարության նորմերի դեմ արտահայտության փոխարեն:

ՄԵՂՄԻԶ, մեքենաների և կառույցների կառուցվածքներում տատանումների մարման և հարված. ծանրաբեռնվածությունների մեղմման սարք: Լինում են մեխ., հիդրավլիկ., պնևմատիկ. Մ–ներ: Կառուցվածքներում օգտագործում են զսպաններ, ռետինե տարրեր, նաև հեղուկներ ու գազեր:

ՄԵՂՎԱԲՈՒՆԴՈՒԹՅՈՒՆ, **մեղվապահություն**, զբաղվում է մեղրատու մեղուների բուծմամբ՝ մեղր, մեղրամոմ, ակնամոմ, մեղվակաթ, ծաղկափոշի, մեղվաթույն ևն ստանալու, ինչպես նաև մշակաբույսերի խաչաձև փոշոտումն ապահովելու համար: Հայաստանը Մ–ի հնագույն կենտրոններից է: Հայկ. լ–աշխարհում տարածված է հայկ. դեղին և լեռն. գորշ մեղուները:

2015–ի դրությամբ ՀՀ–ում կար ավելի քան 250 հզ մեղվաընտանիք:

ՄԵՂՎԱԲԵՆԱՆԻՔ, մեղրատու մեղուների ընդհանրություն՝ բաղկացած աշխատավոր մեղուներից (90 %), մայր մեղվից և բոռերից: Առավել չափերի է հասնում ամռանը (մինչև 80–100 հզ. մեղու), աշնանը նվազում է: Ուժեղ Մ. սեզոնին պաշարում է մոտ 150 *կգ* մեղր:

ՄԵՂՎԱԹՈՒՅՆ, **ապիտոքսին**, աշխատավոր մեղվի խայթող օրգանի թելանման գեղձի արտազատուկը: Անգույն, թանձր, յուրահատուկ հոտով դառնահամ հեղուկ է: Պարունակում է կենսաբանորեն ակտիվ սպիտակուց, ֆերմենտներ, ազատ ամինաթթուներ, հիստամին, մրջնաթթու, ճարպեր, միկրոտարրեր ևն: Ունի հակաբորբոք. և խոլինոլիտիկ ազդեցություն:

ՄԵՂՎԱԹՈՒՓ (Laburnum), **ոսկեանձրև**, թիթեռնածաղկավորների ընտանիքի տերևաթափ ծառերի կամ թփերի (մինչև 5 *մ* բարձր.) ցեղ: Հայտնի վայրած 3 տեսակներն աճում են Հվ. Եվրոպայում, Փոքր Ասիայում: Գեղազարդիչ է. օգտագործվում է կանաչապատման մեջ: Մեղրատու է, պարունակում է ցիտիզին թունավոր ալկալոիդը:

ՄԵՂՎԱԿԱԹ, աշխատավոր մեղուների վերծնոտ. և ըմպան. գեղձերի արտազատուկը, որով մեղուները լցնում են մեղրահացի մայրաբջիջները:

ՄԵՂՎԱԿԵՐՆԵՐ (Meropidae), ալկիոնանմանների կարգի թռչունների ընտանիք: Հայտնի է 24 տեսակ, ՀՀ–ում՝ 2՝ ոսկեգույն և կանաչ Մ.: Փետրածածկն աչքի է ընկնում կանաչ, դեղին, կապույտ, կարմիր գույներով և դրանց երանգների համադրությամբ: Սշտապես երամային են: Միջատակեր են, հիմնականում սնվում են թռչող միջատներով:

ՄԵՂՐ, քաղցր մածուցիկ նյութ. պատրաստում են աշխատավոր մեղուները մեղրատու բույսերի ծաղիկների նեկտարից և օգտագործում որպես կեր: Արժեքավոր սննդամթերք է: Տարբերում են ծաղկի (նեկտարի) և մանանայի Մ.: Քիմ. կազմը և որակը կախված են բույսի տեսակից, կլիմ. պայմաններից, մշակման եղանակներից ևն:

ՄԵՂՐԱԳԵՏ, գետ Հայկ. լ–աշխարհում, *Արածանիի* ձախ վտակը: Երկ.՝ մոտ 87 *կմ*: Սկիզբ է առնում Հայկ. Տավրոսի հս. և Բզնունյաց լ–ների արմ. լանջերից: Հոսում է հվ–արլ–ից հս–արմ., Սշո դաշտում միախառնվում Արածանիին: Մնումը խառն է, հորդացումը՝ մայիս–հունիսին:

ՄԵՂՐԱԿԵՐ (Mellivora capensis), **ճաղատ գորշուկ**, կզաքիսազգիների ընտանիքի կաթնասուն կենդանի: Մարմնի երկ.՝ մինչև 75, պոչինը՝ մինչև 20 *սմ*: Ապրում է հիմնականում Աֆրիկայում, Առաջավոր, Միջին և Հվ. Ասիայում, պահպանվում է արգելոցներում:

ՄԵՂՐԱՀԱՑ, **մոմահաց**, մեղուների՝ մեղրամոմից հյուսած բույնը, որտեղ նրանք կուտակում են մեղր ու ծաղկափոշի և աճեցնում սերունդներ: Կազմված է ընդհ. միջնորմի 2 կողմում դասավորված վեցանկյուն պրիզմայաձև բջիջներից: Տարբերում են աշխատավոր ու մայր մեղուների, անցողիկ և բոռերի բջիջներ:

ՄԵՂՐԱՁՈՐ, Գոմուր, գետ ՀՀ Կոտայքի մարզում, *Մարմարիկի* ձախ վտակը: Սկիզբ է առնում Փամբակի լ–շղթայի հվ. լանջերից՝ 2820 *մ* բարձր–ից: Երկ.՝ 14,7 *կմ*, ավազանը՝ 114 *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 1,67 *մ³/վ*: Գետահովիտը V–աձև է: Մնումը՝ հիմնականում ձնանձրևային (56 %), վարարումը՝ ապրիլ–հունիսին: Գետահովիտն ունի կազդուրիչ–վերականգնող. նշանակություն: Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով:

ՄԵՂՐԱՁՈՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐ, ՀՀ Կոտայքի մարզում՝ Մարմարիկ գետի միջին ավազանում: Արդ. պաշարները հիմնականում գետի ձախ ափին են: Հանքանյութը կազմված է հիմնականում պիրիտ, խալկոպիրիտ, սֆալերիտ, գալենիտ, թելուրիդներ միներալներից, բնածին ոսկուց, արծաթից և մի շարք սուլֆիդներից: Հանքանյութի պաշարները մոտ 600 հզ. *տ* են (ոսկու միջին պարունակությունը՝ 13 *գ/տ*):

ՄԵՂՐԱՄՈՄ, ճարպանման հատիկավոր նյութ. արտադրվում է մեղրատու մեղուների (հիմնականում՝ 12–18 օրական) և որոշ միջատների հատուկ գեղձերում: Կազմված է բարդ եթերների խառնուրդից (մինչև 75 %), ազատ կարբոնաթթուներից և սահման. ածխաջրերից: Հարուստ է A վիտամինով:

ՄԵՂՐԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐ, **մեղրատուներ**, ծածկասերմ կամ ծաղկավոր բույսերի մեծ խումբ, որոնցից մեղուները նեկտար և ծաղկափոշի են հավաքում: ՀՀ–ում տարածված են ավելի քան 1000 տեսակի Մ. բ., որոնցից մեղվաբուծության համար արժեքավոր են 200–ը:

ՄԵՂՐԵԲԼՅԱՆ Ռոբերտ–Վարդան Վահանի (1922–2009), հրթիռ. միջուկ. շարժիչների բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1950): 1961–86–ին՝ ԱՄՆ Օդագնացության և տիեզ. տարածության հետազոտման ազգ. կենտրոնի (ՆԱՍԱ) խմբի ղեկ., ապա՝ գլխ. կոնստրուկտոր: Մասնակցել է «Մարիներ–2», «Ռեյնջեր», «Մարիներ–Մարս», «Սերվեյոր» և այլ տիեզ. ծրագրերի, «Եզեկիել» (հրապիրված մասնագետ) և «Ներվա» (գլխ. կոնստրուկտոր) նախագծերի մշակմանը: Աշխ–ները վերաբերում են հրթիռների միջուկ. շարժիչներին, մասնավորապես՝ գազանման վառելանյութով աշխատող ջերմամիջուկ. ռեակտորներով հրթիռների դանդաղեցումներին: ՆԱՍԱ–ի գիտ–յան ու տիեզերքի բաժնի ղեկ. (1960–88):

ՄԵՂՐԻ, գետ ՀՀ Սյունիքի մարզում, *Արաքսի* ձախ վտակը: Սկիզբ է առնում համանուն լ–շղթայի հվ. լանջերից՝ մոտ 3300 *մ* բարձր–ից: Արաքս է թափվում ծ. մ–ից 500 *մ* բարձր–յան վրա: Երկ.՝ 36 *կմ*, ավազանը՝ 336 *կմ²*: Ջրի միջին ծախսը՝ 3, 31 *մ³/վ*, առլգն՝ 87,5 *մ³/վ* (12.04.1956, Մեղրի), հոսքը՝ 104,5 մլն *մ³*: Վերին հոսանքում գետահովիտը V–աձև է, ստորինում՝ լայն: Մնումը ձնանձրևային է (68 %) և ստորջրյա: Վարարում է գարնանը, որի ընթացքում ձևավորվում է տարեկան հոսքի 71 %–ը: Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով: Սելավաբեր է:

ՄԵՂՐԻ, ք. (1984–ից) ՀՀ Սյունիքի մարզում՝ Երևանից 373 *կմ* հվ՝ համանուն գետի ափին՝ Զանգեզուրի լ–շղթայի հվում: Բն.՝ 4,8 հզ. (2012): Կան շինաբարի, մրգերի պահածոների, գինու և հյութերի

ձեռն-ներ: Տարածքը բնակեցված է եղել դեռևս նախնադարում: Հայտնաբերվել են բրոնզի և երկաթի դարերի նյութ. մշակույթի մնացորդներ: V դ–ի սկզբին Սմբատ Բագրատունին Մ–ին տվել է Կարճավան անվանումը: Ենթարկվել է թաթար. և թուրքմ. ցեղերի ասպատակություններին: XVIII դ–ի սկզբին մեղրեցիները մասնակցել են *Դավիթ Բեկի* գլխավորած ազատագր. շարժմանը: Քաղաքում են Սբ Մարիամ Աստվածածին, Սբ Հովհաննես, Սբ Սարգիս եկեղեցիները և Անապատաց վանքը (բոլորը՝ XVII դ.), Մեղրու 6 բերդը (1083, շրջապատող լեռների վրա):

ՄԵՂՐՈՒ ԲԱՐԲԱՌ, հայ–ի «ս» («լիս») ճյուղի բարբառ: Խոսվել է Մեղրիում: Ունի եռաստիճան (բ–պ–փ) բաղաձայն. համակարգ:

ՄԵՂՐՈՒ ԼԵՌՆԱՇՂԹԱ, ՀՀ Սյունիքի մարզի հվ–արլ–ում: Զանգեզուրի լ–շղթայի հվ–արլ–ից ձգվում է հս, ապա՝ հվ–արլ.՝ մինչև Արաքսի հովիտը: Երկ.՝ 59 *կմ*, առլգն բարձր.՝ 3256 *մ* (Բաղացսար): Ջրբաժան է Արաքսի և նրա վտակ Ողջիի միջև: Կան պղինձմոլիբդեն. ու բազմամետաղ. հանքավայրեր, նեֆելինային սիենիտ, գրանիտ, ոսկու և արծաթի երևակումներ: Գերակշռում են լ–անտառ. (կաղնու, բոխու, նոսրանտառներով ու շիբլյակի՝ առավելապես ցաքու խմբակցություններով), բարձրադիր գոտում՝ լ–մարգագետնային լանդշաֆտները: Մ. լ–ի հս–արլ. լանջերն ընդգրկված են *Շիկահողի* արգելոցի մեջ:

ՄԵՂՐՈՒ ԿԻՐՃ, Քարավազի կիրճ, ՀՀ Սյունիքի մարզի ծայր հվ–ում՝ Արաքսի հովտում: Հս–ից եզրավորված է Զանգեզուրի ու Մեղրու, հվ–ից՝ Ղարադաղի (Իրան) լ–շղթաներով: Երկ.՝ մոտ 43 *կմ*, խոր.՝ 800 *մ*, ամենացածր կետի բարձր. ծ. մ–ից՝ 380 *մ* (ՀՀ սահմաններում): Առաջացել է Արաքսի խորքային էրոզիայի և երկրակեղևի նորագույն վերընթաց շարժումների հետևանքով:

ՄԵՂՈՒ մեղրատու, ընտանի (Apis mollifera), թաղանթաթևավորների կարգի մեղուներ ցեղի (Apis) մեղվանմանների ընտանիքի միջատ: Բնական պայմաններում Մ–ներն ապրում են ընտանիքներով՝ ծառերի փչակներում, քարաժայռերում, ծերպերում և այլ պատսպարաններում: Մեղվաընտանիքը կենսբ. ամբողջություն է, որտեղ բոլոր անհատները փոխկապակցված են և ընդունակ չեն ինքնուրույն գոյության: Այն բաղկացած է 1 մայր, 60–80 հզ. աշխատավոր մեղուներից և մի քանի հարյուր (երբեմն՝ հազար) բոռերից: Մեղրատու Մ–ները բաժանվում են եվրոպ., կովկաս., աֆրիկ. և ասիական խմբերի: ՀՀ–ում տարածված են կովկաս. գորշ Մ. և հայկ. դեղին մեղուն:

«ՄԵՂՈՒ», բանասիր., գրականագիտ., տնտեսագիտ., երգիծ. հանդես (1856–65, 1870–74, Կ. Պոլիս): Խմբ–ներ՝ Հարություն Սվաճյան, Հովհաննես Հովվյան, Աբրահամ Մուրադյան, Արմենակ Հայկունի, Հակոբ Պարոնյան: Ունեցել է առաջադիմ. ժողովրդավար. ուղղվածություն:

«ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ», քաղ., բանասիր. և առևտր. պարբերաթերթ (1858–86, Թիֆլիս՝ աշխարհաբար): Խմբ–ներ՝ Ստեփանոս Մանդինյան, Պետրոս Սիմեոնյան: Եղել է հայ ազգ–պահպանող. հոսանքի գաղափարախոսը:

ՄԵՂՈՒՆԵՐ, մեղվանմաններ, խայթող թաղանթաթևավորների ենթակարգի միջատների վերնաընտանիք: Երկ.՝ 1,5 *մմ*–5 *սմ* (սովորաբար՝ 1–1,5 *սմ*): Հայտնի է մոտ 30 հզ. տեսակ: Տարածված են ամենուրեք, որտեղ աճում են ծաղկավոր բույսեր: Վերջինների հետ Մ. կապված են որպես փոշոտողներ: Մ–ի տեսակների մեծ մասը միայնակ է, մի մասն էլ ապրում է գաղութներով, հաս. միջատներ են (օր.՝ **մեղրատու մեղուն**), ապրում են ընտանիքներով: 20 տեսակ պահպանվում են:

ՄԵՂՈՒՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓՏԱԽՏ, մեղվաընտանիքի վարակիչ հիվանդություն. հարուցիչը Streptococcus pluton բակտերիան է: Բնորոշվում է մեղուների 4–7 օրական թրթուրների զանգված. անկումներով կամ մեղվաընտանիքի թուլացմամբ: Հիվանդությունը տարածում են երիտասարդ մեղուները: Ձվերի, թրթուրների և հարսնյակների ամբողջությունն ունենում է խայտաբղետ տեսք:

ՄԵՂՔ (իրավունք), իրավ. նորմի խախտումով վնասակար կամ հանրության համար վտանգավոր գործողության (անգործության) ներքին սուբյեկտիվ կողմը, անձի հոգեկան–իմացական վերաբերմունքն իր կատարած արարքի ու նրա հետևանքների նկատմամբ: Դրսևորվում է դիտավորությամբ և անզգուշությամբ: Անձը քր. պատասխանատվության կարող է ենթարկվել միայն այն դեպքում, եթե նրա գործողություններում առկա է Մ.: Մխիթար Գոշի, Սմբատ Սպարապետի դատաստանագրքերում, «Կանոնագիրք հայոց»–ում Մ–երի ձևերն ու տեսակները դրվում էին պատասխանատվության հիմքում:

ՄԵՄԼԻՆԳ (Memling) Հանս (մոտ 1440–1494), նիդեռլանդացի գեղանկարիչ: Գույների նուրբ վարպետ էր՝ հակված կրոն. տեսարանների քնար. և կենցաղ. մեկնաբանությանը («Հովիվների երկրպագությունը», եռապատկեր, 1479, ևն): Դիմանկարներն առանձնանում են դիմագիծ. ճշգրտությամբ, կատարման խիստ ձևերով:

ՄԵՄՄԻ (Memmi) Ալբեր (ծ. 1920), թունիսցի ֆրանսիագիր գրող, սոցիոլոգ: 1959–ից՝ Ֆրանսիայում: «Աղի սյուն» (1953), «Կարիճ» (1969), «Անապատ» (1977) վեպերում պատկերել է Արևելքի և Արևմուտքի դիմակայությունը, արաբ., եվրոպ. և արմ. մշակույթների համագոյակցումը Ֆրանսիայում և նրա գաղթավայրերում: Հեղինակ է նաև «Թերեզան և ուրիշ կանայք» (2004) և այլ գործերի:

«ՄԵՄՈՐԻԱԼ», միջազգ. պատմ., բարեգործ. և իրավապաշտպան կազմ–յուն ՌԴ–ում: Ստեղծվել է 1992–ին Մոսկվայում՝ նույնանուն համամիութ. կազմ–յան (1989) հիմքի վրա՝ բացահայտելու և հրապարակելու համար ԽՍՀՄ–ում կատարված բռնաճնշումները, հավերժացնելու զոհերի հիշատակը, աջակցելու քաղ. բռնաճնշումների ենթարկված անձանց բարոյական և իրավ. վերականգնմանը: Կազմակերպում է մարդու իրավունքների խախտման մշտադիտարկումներ, արդյունքները հրապարակում:

ՄԵՄՖԻՍ, 1. ք. Հին Եգիպտոսում (Կաիրեից հվ–արմ.): Հիմնադրվել է մ. թ. ա. III հզ–ամյակում: Եղել է խոշոր կրոն., քաղ., մշակութ. և արհեստագործ. կենտրոն, Եգիպտոսի մայրաքաղաքը՝ մ. թ. ա. 28–23–ին: Պահպանվել են Մ–ի տաճարների, գերեզմանների ավերակներ: ՅՈՒՆԵՍԿՕ–ի Համաշխ. մշակույթի ժառանգության ցանկում է: 2. Ք.՝ ԱՄՆ–ի Թեննեսի նահանգ–ում, նվինգստո՝ Միսսուրի գետի ափին: Բն.՝ 663 հզ. (արվարձաններով՝ 1,3 մլն, 2010): Հիմնադրվել է 1819–ին:

ՄԵՅ ԼԱՆ ՖԱՆ (1894–1961), չին դերասան–երգիչ, ռեժ., նկարիչ, հաս. գործիչ: Թատրոնում հանդես է եկել 1910–ից: Վերամարմնավորման վարպետ, հռչակվել է կանանց դերերի կատարումով: Ձգտել է չին. թատրոնի ձևերը մոտեցնել ժամանակակից թատրոնին:

ՄԵՅԲՈՄՅԱՆ ԳԵՂՁԵՐ [գերմանացի անատոմ Հ. Մեյբոմի (H. Meibom, 1638–1700) անունով], մարդու և կաթնասուն կենդանիների (բացի միանցքանիներից, մաշկոտանիներից, կետերից) կոպերում տեղադրված ճարպագեղձեր:

ՄԵՅԵ (Meillet) Անտուան (1866–1936), ֆրանսիացի լեզվաբան, հայագետ, սլավոնագետ: Ֆրանսիայի (1924) և աշխարհի բազմաթիվ ակադ–ների ու գիտ. ընկ–ների անդամ, Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1906): 1891 և 1903–ին այցելել է Հայաստան, Էջմիածնի մտնդ–ում ուսումնասիրել է գրաբարի հնչյունաբանությունը: 1919–ին Փարիզում Ֆ. *Մակլերի* և ուր. հետ հիմնադրել է Հայագիտ. ընկ–ը, 1920–ին՝ *«Ռևյու դևզ էթյուդ արմենիեն»* հայագիտ. տարեգիրքը: «Հայերենի բարբառային դիրքը» (1896) առաջին հայերենագիտ. ուսումնասիրությամբ Մ. որոշել է հայ–ի դիրքը հնդեվրոպ. լեզուների շարքում. հայ–ը համարել է առանձին լեզվաճյուղ: Հեղինակ է նաև «Դասական հայերենի համեմատական քերականության ուրվագիծ» (1903) աշխ–յան, «Հին հայերենի տարրական դասընթաց» (գերմ., 1913) դասագրքի: Հայ. հրատարակվել են Մ–ի «Հայագիտական ուսումնասիրություններ» (1978), «Նամակներ Թիֆլիսից եւ Հայաստանից. 1891 թ. ապրիլի 29–ից օգոստոսի 3» (2002) նամականին:

ՄԵՅԵՐ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (1874/75–1939), ռուս. կրոն. փիլ., հրապարակախոս (ծագումով՝ գերմանացի): 1920–ական թթ–ին Գ. Դ. Ֆեդոտովի հետ հիմնադրել է «Կիրակի» կրոնափիլ. խմբակը: 1928–ին ձերբակալվել է (մինչև 1934–ը՝ ուղղիչ աշխ. ճամբարում): Մ–ի մտորումների առանցքում զոհաբերության միջոցով անհատի հանդիպումն է Բացարձակի (Աստծու) հետ, ինչպես նաև մշակույթի, խորհրդանիշի, առասպելի ճգնաժամի խնդիրները («Փիլիսոփայական երկեր», 1982, ևն):

ՄԵՅԵՐ (Meyer) Էդուարդ (1855–1930), գերմանացի պատմաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1909): Հիմն. աշխ–յան՝ «Հին ժամանակների պատմության» (հ. 1–5, 1884–1902) մեջ շարադրել է համաշխ. պատմությունը՝ Արևելքի (նաև Հայաստանի) հին քաղաքակրթությունների առաջացումից մինչև մ. թ. ա. 355–ը:

ՄԵՅԵՐ Լոթար Յուլիոս (1830–1895), գերմանացի քիմիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1890): 1864–ին կազմել է 27 քիմ. տարրերի աղյուսակ, որտեղ տարրերը տեղաբաշխել է՝ ըստ ատոմ. զանգվածների մեծացման, և խմբավորել՝ ըստ արժեքականության՝ առանց տես. ընդհանրացումների: 1870–ին (Դ. Ի. Մենդելեևից հետո) կազմել է քիմ. տարրերի համակարգման ընդհ. աղյուսակ, որը, ըստ Մ–ի, «էապես նույնական է Մենդելեևի պարբերական համակարգի հետ»: Կառուցել է տարրերի ատոմ. ծավալների ատոմ. զանգվածներից ունեցած կախվածության կորերը:

ՄԵՅԵՐ (Meier) Ռիչարդ (ծ. 1934), ամերիկացի ճարտ.: Զարգացնելով Լը Կորբյուզեի գաղափարները՝ մասնավոր (Դուգլաս վիլլան Հարբոր Սփրինգսում, 1971–73) և հաս. (թանգարան՝ Ատլանտայում, 1980–83) կառույցներում դինամիկ ճարտ. ձևերի հղկվածությունը հակադրել է բնական կամ արհեստ. միջավայրի անկանոնությանը:

ՄԵՅԵՐ (Meyer) Ռոբերտ (1864–1947), գերմանացի գինեկոլոգ-հյուսվածաախտաբան: 1939-ից՝ ԱՄՆ-ում: Աշակել է կանանց սեռ. օրգանների բարորակ և չարորակ ուռուցքների հյուսվածքածնության (հիստոգենեզ) տեսություն, հիմնավորել է վաղ ախտորոշման անհրաժեշտությունը՝ արգանդի ուռուցքի բուժման դեպքում:

ՄԵՅԵՐ Վիկտոր (1848–1897), գերմանացի քիմիկոս-օրգանիկ: Առաջինն է ստացել (1872) նիտրամիացությունները և ուսումնասիրել դրանց քիմ. հատկությունները: Քարածխի խեժի բենզոլային ֆրակցիաներում հայտնաբերել է (1882) թիոֆենը, հետազոտել դրա և շատ ածանցյալների հատկությունները: Առաջարկել է (1878–80) գոլորշու խտությամբ հեղուկ նյութերի մոլ. զանգվածի որոշման եղանակը: Ներմուծել է «տարածաքիմիա» («ստերեոքիմիա») տերմինը:

ՄԵՅԵՐ Քոնրադ Ֆերդինանդ (1825–1898), շվեյցարացի գերմանագիր գրող: «Շվեյցարացու քսան բալլադը» (1864), «Բանաստեղծություններ» (1892) քնար. բանաստեղծությունների ժող-ներում, «Հուտտենի վերջին օրերը» (1871) և այլ պոեմներում, «Յուրգ Ենաչ» (1876) վեպում, «Սուրբը» (1880) և այլ նովելներում արծարծել է պատմ. հիմնախնդիրներ:

ՄԵՅԵՐՀՈԼԴ (Meyerhold) Վսեվոլոդ Էմիլևիչ (1874–1940), ռուս. ռեժ., դերասան (ծագումով՝ գերմանացի): ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1923): Թատրոնի բարեփոխիչներից: 1906–07-ին՝ Վ. Ֆ. Կոմիսարժևսկայայի թատրոնի (Ս. Պետերբուրգ) գլխ. ռեժ.: Զարգացրել է «պայմանական թատրոնի» խորհրդանշ. հայեցակարգը (Մ. Մետեռլինկի «Քույր Բեատրիս», ևն), հաստատել «թատերական ավանդականության» սկզբունքները: 1920–38-ին Մոսկվայում ղեկավարել է թատրոն (1923-ից՝ Մ-ի անվ., 1926-ից՝ պետ.): Բեմադրել է Վ. Վ. Մայակովսկու «Միստերիա-բուֆֆ», «Քայտոջիլ», Ֆ. Կրոմմելինկի «Բարեհոգի եղջյուրակիրը», Ա. Ն. Օստրովսկու «Անտառ», Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», Ա. Դյումա-որդու «Կամելիազարդ տիկինը» և այլ գործեր: 1939-ին բռնադատվել է, գնդակահարվել:

ՄԵՅԵՐՀՈՖ (Meyerhof) Օտտո (1884–1951), գերմանացի կենսաքիմիկոս: 1938-ից՝ Ֆրանսիայում, 1940-ից՝ ԱՄՆ-ում: Աշխ-ները վերաբերում են մկան. կծկումների քիմիային և ջերմադինամիկային, գլիկոլիզի և գլիկոգենոլիզի միջանկյալ ֆերմենտ. փուլին (Էմբդեն–Մեյերհոֆի ցիկլ): Հաստատել է, որ կենդանի բջջի էներգիան կուտակվում է ֆոսֆոեթեր. կապերում: Նոբելյան մրց. (1922):

ՄԵՅԵՐ-ՄԵԼԻՔՅԱՆ Նոնա Ռոբերտի (ծ. 1937), բուսաբան: Ժամանակակից ծաղկափոշեգիտ-յան առաջատարներից: Կենսբ. գիտ. դ-ր (1978): Աշխ-ները վերաբերում են բույսերի ծաղկափոշու և սպորների ձևի, կառուցվածքի, զարգացման, ալերգաբանության, էկոլոգիայի, շերտագրության, հնագիտ-յան խնդիրներին: ԽՍՀՄ-ում առաջինն է կիրառել ժամանակակից և բրածո բույսերի ծաղկափոշու, սերմերի և սպորների էլեկտրոնամանրադիտակ. հետազոտության եղանակներ:

ՄԵՅԼԵՐ (Mailer) Նորման Քինզսլի (1923–2007), ամերիկացի գրող, հրապարակախոս: «Մերկերն ու մեռածները» (1948) ռազմ. թեմայով վեպում երևան է հանել բռնության գաղ. և հոգեբ. արմատները: 1950–60-ական թթ-ի սահմանագծին հակամշակույթի ներկայացուցիչ էր («Սպիտակ նեգրը», 1957, հայ.՝ 2007, էսսե): Հեղինակ է նաև «Ամերիկյան երազանք» (1965), «Դահիճի երգը» (1979) վեպերի, «Գիշերվա բանակները», «Մայամին և Չիկագոյի պաշարումը» (երկուսն էլ՝ 1968) վավերագր-հրապարակախոս. երկերի, պատմ. երանգներով հարուստ «Երեկոներ հին ժամանակներում» (1983) «գաղափարական վեպի», Ա. Հիտլերի ընտանիքի մասին «Դեյակն անտառում» (2007) կենսագր. վեպի:

ՄԵՅՆ (Mayne) Թոմ (ծ. 1944), ամերիկացի ճարտ.: Շինությունները դինամիկ, «քաոսային» հորինվածքներ են («Sun» երկնաքերը Սեուլում, 1997), նկատելի են ճարտ-ի և պատմականի խզումը (Ու. Լ. Մորսի անվ. դատարանի շենքը Յուջինում, 2004–06), էկոլոգ. ճարտ-յան սկզբունքները (վարչ. շենք՝ Սան Ֆրանցիսկոյում, 2003–07):

ՄԵՅՈ (Mayo), ամերիկացի վիրաբույժներ, հայր և որդիներ. 1. **Ուիլյամ Ուորալ Մ.** (1819–1911), ծնվել է Մեծ Բրիտանիայում, 1845-ից՝ ԱՄՆ-ում: Աշխ-ները վերաբերում են որովայնի խոռոչի վիրաբուժությանը: 1861–65-ի քաղաքաց. պատերազմի մասնակից՝ ԱՄՆ-ում: 2. **Ուիլյամ Ջեյմս Մ.** (1861–1939): Աշխ-ները վերաբերում են որովայնի խոռոչի վիրաբուժությանը, ուրոլոգիային, փիլ-յանը, առողջապ-յան կազմակերպմանը: 3. **Չառլզ Խորաս Մ.** (1865–1939): Աշխ-ները վերաբերում են կլինիկ. ու փորձարար. վիրաբուժությանը, բժշկ. կենտրոնների կառավարմանը և նրանց կազմակերպմանը: Հանրահայտ են Մ-ի կլինիկան (1889-ից) և հիմնադրամը (1915-ից):

ՄԵՅՈ Էլթոն (1880–1949), ամերիկացի սոցիոլոգ: Ամերիկ. արդ. սոցիոլոգիայի հիմնադիրներից, առաջադրել է ձեռնարկատերերի և աշխատողների միջև «մարդկային հարաբերությունների» մասին ուսմունքը՝ որպես «արդյունաբերության մեջ խաղաղության» հաստատման ուղի:

ՄԵՅՈԶ (հուն.՝ meiosis – նվազում), բջջի բաժանման եղանակ, որի արդյունքում դուստր բջիջներում տեղի է ունենում քրոմոսոմների թվի նվազում (2 անգամ), և 1 դիպլոիդ բջջից առաջանում են 4 հապլոիդ բջիջներ: Սեռ. բջիջների առաջացման հիմն. շղթան է: Քրոմոսոմների դիպլոիդ թիվը վերականգնվում է բեղմնավորման միջոցով: Արական և իգական սեռ. բջիջների միաձուլման դեպքում քրոմոսոմների դիպլոիդ հավաքակազմը վերականգնվում է, որով պահպանվում է քրոմոսոմների թվի հաստատունությունը սերնդափոխության ժամանակ: Տես նաև *Միտոզ*:

ՄԵՅՍԵԼ Մաքսիմ Նիկոլաևիչ (1901–1987), ռուս. մանրէաբան և բջջաբան: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1960): Հայտնաբերել է (1928) քիմ. նյութերի մուտածին ազդեցությունը: Հետազոտել է միկրոօրգանիզմները՝ ըստ ֆունկցիոնալ ձևաբանության և ֆիզիոլոգ. բջջաբանության, նավթից սպիտակուցների մանրէաբան. սինթեզը ևն:

ԽՍՀՄ ԳԱ Ի. Ի. Մեչնիկովի անվ. (1952), Պետ. (1971) մրց-ներ:

ՄԵՅՏՈՒՍ Յուլի Սերգեևիչ (1903–1997), ուկրաինացի կոմպոզիտոր: Թուրքմ. ԽՍՀ (1944), Ուկր. ԽՍՀ (1948) արվ. վաստ. գործիչ: Ուկր. ԽՍՀ ժող. արտիստ (1973): Հեղինակ է «Երիտասարդ գվարդիա» (1947), «Գողացված երջանկություն» (1960), «Իվան Ահեղ» (1983), «Անտոնիոս և Կլեոպատրա» (1997) օպերաների, սիմֆ., վոկալ և այլ գործերի: ԽՍՀՄ (1951), Ուկր. ԽՍՀ (1991) Պետ. մրց-ներ:

ՄԵՆ Ալեքսանդր Վլադիմիրովիչ (1935–1990), ՌՈՒԽ քհն., քարոզիչ, աստվածաբան: Հեղինակ է քրիստ. դավանաբանության հիմնադրույթների, կրոնի պատմության, ուղղափառ ժամերգության մասին երկերի, «Ճանապարհի, ճշմարտության և կյանքի որոնումներում» (գիրք 1–6, 1970–83, Է. Սվետլով կեղծանունով), «Մարդու որդին» (1969, Ա. Բոգոլյուբով կեղծանունով), «Խորհուրդ, բառ և պատկեր» (1980) և այլ մատենաշարերի: Սպանվել է:

ՄԵՆ, Ման (Mun), Թոմաս (1571–1641), անգլիացի տնտեսագետ: Հարստությունը նույնացրել է փողի հետ, անհրաժեշտ է համարել ավելացնել դրանք՝ ապրանքների ներմուծման նկատմամբ արտահանման ավելացման ուղիով: Փողը համարել է ոչ միայն գանձ, այլև շրջանառության միջոց և կապիտալ:

ՄԵՆ, նահց ԱՄՆ-ի Ատլանտ. ափի հս-ում: Տարածքը՝ 86,2 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,3 մլն (2012): Վարչ. կենտրոնը՝ *Օգաստա*:

ՄԵՆ ՌԵՅ (Man Ray, Իմանուիլ Ռուդնիցկի, 1890–1976), ամերիկացի (ծագումով՝ հրեա) նկարիչ, լուսանկարիչ, ռեժ.: Ամերիկ. դադաիստների խմբավորման հիմնադիրներից (1915): 1921–40-ին և 1951-ից Փարիզում ընդգրկվել է սյուրռեալիստների խմբավորման մեջ: 1940–51-ին՝ Հոլիվուդում: Առավել հայտնի են նրա սյուռեալիստ. («Նվեր», 1921) և ավանգարդիստ. լուսանկարները: Նկարահանել է փորձարար. ֆիլմեր («Վերադարձ բանականությանը» (1923), «Էմակ Բակիա» (1926), որոնցով հիմք է դրել վիդիո-արտին:

ՄԵՆ ՅԶԻ (մ. թ. ա. 372–289), չին փիլ.: Կոնֆուցիոսի հետևորդներից: Հայացքները շարադրված են «Մեն Յզի» գրքում: Զարգացրել է մարդու նախասկզբն. «բարի բնույթի» մասին ուսմունքը:

ՄԵՆԱ (Mena) Խուան դե (1411–1456), իսպանացի բանաստեղծ: Ժամանակակիցները Մ-ին անվանել են «Կաստիլիայի բանաստեղծների իշխան»: Ճանաչվել է «Ճակատագրի լաբիրինթոսը» (մոտ 1444) այլաբան. պոեմով, որտեղ պատկերել է մարդկության պատմությունը: Հեղինակ է նաև սիրային քնարերգության:

ՄԵՆԱԽՈՍ (Eromstachys), **անապատահասկ**, խուլեղինջազգիների (շրթնածաղկավորներ) ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 50, ՀՀ-ում՝ 2 տեսակ և 1 տարատեսակ՝ գրեթե բոլոր մարզերում:

ՄԵՆԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ, **մոնոգամիա**, ամուսնության և ընտանիքի պատմ. ձև, երբ մարդ ունենում է հակառակ սեռի մեկ զուգընկեր: Հաջորդել է ***բազմամուսնությանը*** և աստիճանաբար դարձել է ***ամուսնության*** տիրապետող ձև:

ՄԵՆԱՆԴՐՈՍ (Menander, մ. թ. ա. մոտ 343–մոտ 291), հույն դրամատուրգ–կատակերգակ: Նոր ատտիկյան կատակերգության հիմնադիրներից: Պաշտպանել է կանանց, երեխաների իրավունքները, մերկացրել կենցաղ. այլանդակ երևույթները, կարեկցել ստրուկներին:

ՄԵՆԱՆԴՐՈՍ ՊՐՈՏԵԿՏՈՐ (Menander Protector), VI դ–ի բյուզանդացի ժամանակագիր: Հեղինակ է «Պատմություն» երկի (մեզ է հասել Կոստանդին VII Ծիրանածնի ծաղկաքաղերում). ընդգրկում է 558–582–ի ժամանակաշրջանը: Կարևոր տեղեկություններ է հաղորդում բյուզանդա–պարսկ. հարաբերություններում Հայաստանի, հայերի դերի ևնի վերաբերյալ:

ՄԵՆԱՀՆՈՐՀ (տնտ.), 1. որևէ գործունեություն իրականացնելու համար պետությանը, ձեռն–յանը, կազմ–յանը կամ ֆիզ. անձին տրամադրվող բացառիկ իրավունք. շուկայական տնտ–յան պայմաններում հակադրվում է ազատ մրցակցությանը: 2. Ապրանքների արտադր–յան և ծառայությունների մատուցման զգալի մասի կենտրոնացում մեկ ընկ–յան, միության, միավորման ձեռքում և շուկայում գերիշխող դիրքի սահմանում, որը թույլ է տալիս պայմաններ թելադրել սպառողին, ընդհուպ՝ մենաշնորհ. գին սահմանելը, որը մենաշնորհ. շահույթի ստացման հիմքն է: Լինում է բնական (օր.՝ առանձնահատուկ բնական պայմանների կամ տեղադրման վայրի շնորհիվ), տեխնոլոգ. (երբ որևէ սարքի, մեխանիզմի միջոցով բավարարվում է արտադրանքի քանակի նկատմամբ պահանջարկը):

ՄԵՆԱՀՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, տնտեսագիտ. տեսություն. ուսումնասիրում է խոշոր կորպորացիաների շուկայական փոխգործողությունները ժամանակակից զանգված. արտադր–յան ճյուղերում: Հիմն. դրույթները ձևակերպել է Է. *Չեմբերլինը* 1920–ական թթ–ի վերջին: Համաձայն Մ. մ. տ–յան՝ ֆիրմայի շուկայական ռազմավարության որոշիչ նպատակն առյգն շահույթի ստացումն է: Մ. մ. տ–յան հիմքում ժամանակակից շուկայում մենաշնորհների ու մրցակցության տարրերի միահյուսման գաղափարն է:

ՄԵՆԱՍՏԱՆ, **վանք, ուխտք**, միասն. կենցաղով ապրող վանականների համայնք: Հայաստանում առաջացել են հիմնականում քրիստոնեությունը պետ. կրոն հռչակելուց (301) հետո: Զարգացած միջնադարում Մ–ները մեծ մասամբ երկրագործ. և արհեստագործ., իսկ տարանցիկ մայրուղիներին մերձակաները՝ առևտր. կենտրոններ էին: Վաղ միջնադարում դրանց կից գործել են դպրոցներ, գրչության արվեստանոցներ:

ՄԵՆԳԵՐ (Menger) Կառլ (1840–1921), տնտեսագետ, քաղաքատնտ–յան ավստր. դպրոցի հիմնադիրը, սահման. օգտակարության տեսության հիմնադիրներից: Տնտեսագիտ–յան հիմն. խնդիրը համարել է անհատ. տնտ–յունների զարգացման օրենքների ուսումնասիրումը, անհատի պահանջմունքների և դրանց բավարարման միջոցների հետազոտումը: Ի հակակշիռ արժեքի աշխ. տեսության՝ առաջարկել է սուբյեկտիվ արժեքի տեսություն, ըստ որի՝ ապրանքի գինը գնորդի ու վաճառողի սուբյեկտիվ գնահատման արդյունք է:

ՄԵՆԴԵԼ (Mendel) Գրեգոր Յոհան (1822–1884), ավստրիացի բնագետ, քհն.: Ժառանգականության մասին գիտ–յան հիմնադիրը (տես *Մենդելիզմ*): Ոլոռի սորտերի հիբրիդացման արդյունքների վերլուծման համար կիրառելով (1856–63) վիճակագր. մեթոդները՝ ձևակերպել է ժառանգականության օրինաչափությունները (տես *Մենդելի օրենքներ*):

ՄԵՆԴԵԼԵ Մոյիեր–Սֆորիմ (Շոլոմ Յակով Բրոյդե, 1835/36–1917), հրեա գրող: Գրել է իվրիտով և իդիշով: Հրեական նոր գրկյան և գր. լեզվի հիմնադիրը: Հեղինակ է «Գործուկաշուն» (1869) դրամատիկ. պամֆլետի, պատմվածքների («Բենիամին Երրորդի ճանապարհորդությունը», 1878, ևն), սոցիալ. վեպերի («Երդմնադրյալ մատանի», մաս 1–2, 1888, «Շլոյմե րեր Հայիմ», 1894–1917, ևն) և այլ գործերի:

ՄԵՆԴԵԼԵԵՎ, Դմիտրի Իվանովիչ (1834–1907), ռուս քիմիկոս, մանկավարժ, հաս. գործիչ, տարրերի պարբեր. համակարգի հայտնագործողը: Մ. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1876–ից): Ռուս. քիմ. ընկ–յան հիմնադիրներից (1868): Հայտնագործել է (1869) ***քիմիական տարրերի պարբերական օրենքը***, որը բնագիտ–յան հիմն. օրենքներից է: Մ–ի աշխ–ները վերաբերում են քիմիայի, ֆիզիկայի, քիմ. տեխնոլոգիայի, օդագնացության, մետաղագործության (չափագիտ–յան), գղտ–յան, ժող. տնտ–յան և այլ բնագավառների: Զարգացրել է լուծույթների տեսության հիմունքները, առաջարկել է նավթի ֆրակցիոն թորման արդ. եղանակ, հայտնագործել է անծուխ վառոդը, խրախուսել է հանք. պարարտանյութերի օգտագործումը, չորացած հողերի ոռոգումը: Եղել է Ռուսաստանի Չափ ու կշիռների գլխ. պալատի (այժմ՝ Դ. Ի. Մենդելեևի անվ. չափագիտ–յան ԳՀԻ) հիմնադիր–տնօրենը (1892–1907):

ՄԵՆԴԵԼԵՎԻՈՒՄ (Mendelevium), Md, տարրերի պարբեր. համակարգի III խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 101, ա. զ.՝ 258,0986, ակտինիդ է: Ճառագայթաակտիվ, առավել կայուն իզոտոպը՝ ^{258}Md ($T_{1/2}$ 51,5 *վ*): Անվանվել է ի պատիվ Դ. Ի. *Մենդելեևի*: Ստացել է արհեստականորեն:

ՄԵՆԴԵԼԻ ՕՐԵՆՔՆԵՐ, Մենդելի կանոններ, սերնդում ժառանգ. գործոնների (ավելի ուշ կոչվեցին *գեներ*) բաշխման վերաբերյալ Գ. *Մենդելի* ձևակերպած օրինաչափությունները: Ներառում են. 1–ին սերնդի հիբրիդների միօրինակության, նրանց ճեղքման, հատկանիշների անկախ զուգորդման (ավելի ճիշտ՝ անկախ ճեղքման) օրենքները: Մ. օ. լրիվ հաստատում և բացատրություն ստացան *ժառանգականության* տեսության հիման վրա:

ՄԵՆԴԵԼԻԶՄ, ուսմունք *ժառանգականության* օրինաչափությունների մասին, որը գենետիկայի հիմքն է: Գենետիկայի սկզբնավորումը կապում են 1900–ին Հ. դե Ֆրիզի, Կ. Կորենսի և Է. Չերմակ–Զեյզենեգի կողմից Գ. *Մենդելի* մոռացված աշխ–ների («Փորձեր բուսական հիբրիդների վրա») հայտնաբերման ու հաստատման հետ (աշխ–ը զեկուցվել է 1866–ին և հրատարակվել 1886–ին): Մ. հեղ–յուն էր կենսբ–յան մեջ. ապացուցել է, որ ժառանգ. գործոններն ունեն կորպուսկուլային (մասնիկային) և վերջավոր ծագում, իսկ նրանց անցումը սերնդից սերունդ որոշվում է վիճակագր. օրինաչափություններով:

ՄԵՆԴԵԼՍՈՆ, Մենդելսոն–Բարթոլդի (Mendelssohn–Bartholdy), Ֆելիքս (1809–1847), գերմանացի կոմպոզիտոր, դիրիժոր, դաշնակահար, երգեհոնահար: Գերմ. առաջին կոնսերվատորիայի հիմնադիրը (1843, Լայպցիգ): Հեղինակ է սիմֆոնիաների («Իտալական», 1833, «Շոտլանդական», 1842), սիմֆ. նախերգանքի («Ֆինգալի քարանձավ», 1832), նախերգանքի (1825) և երաժշտության՝ Վ. Շեքսպիրի «Ամառային գիշերվա երազ» պիեսի համար (1825), կոնցերտների՝ դաշնամուրի և նվագախմբի համար, «Երգեր առանց խոսքի» (1829–45)՝ դաշնամուրի համար, օրատորիաների:

ՄԵՆԵԼԱՈՍ, Տրոյական պատերազմի մասնակից հինհուն. դից–յան մեջ, Սպարտայի արքան, *Հեղինեի* ամուսինը: Կազմակերպել է Տրոյայի արշավանքը՝ վերադարձնելու համար Հեղինեին, որին առևանգել էր *Պարիսը*:

ՄԵՆԵՋԵՐ (անգլ.՝ manager – կառավարիչ), ղեկ. կամ կառավարիչ, որը պատասխանատու է ձեռն–յան գործունեության որոշակի ուղղության համար (անձնակազմի Մ., ներդրումային Մ., հաս–յան հետ կապերի Մ., ֆին. Մ. ևն), նախագծի (նախագծի Մ., մշակույթի ոլորտի Մ.) կամ ամբողջ ընկ–յան (թոփ–Մ.) կառավարիչ:

ՄԵՆԵՋՄԵՆԹ (անգլ.՝ management, < հին ֆրանս. ménagement – ուղեկցման, ուղղորդման արվեստ), տնտեսվարման շուկայական համակարգում կազմ–յան կառավարման տարատեսակ, որին բնորոշ են պաշարների օգտագործման ճկունությունը, հարմարեցումն ու ռացիոնալությունը, որոնք ձեռք են բերվում հատուկ սկզբունքների, գործառույթների ու մեթոդների կիրառմամբ:

ՄԵՆԵՎԻՉՅԱՆ Գաբրիել (Բյուզանդ) Գևորգի (1864–1936), լեզվաբան, հայագետ, խմբ.: ՎենՄՄ անդամ (1882–ից): 1895–96–ին՝ *«Հանդէս ամսօրեայ»*–ի խմբ.: Հեղինակ է «Ազգաբանութիւն ազնուական զարմին Տիւզեանց» (1890), «Գիրք գրելու արուեստը» (1898), «Արդի լեզուագիտութիւնը» (հ. 1, 1903), «Գրիգոր Մագիստրոսի «Գամագտականի» ամբողջական լուծումը» (1912) աշխ–ների, «Պատկերազարդ բնական պատմութիւն» (հ. 1–3, 1897) դասագրքի:

ՄԵՆԵՐԱՆԳ ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄ, մեկ, որոշակի և խիստ հաստատուն հաճախության էլեկտրամագնիս. ճառագայթում: «Մ. ճ.» եզրույթի առաջացումը կապված է այն փաստի հետ, որ լուս. ալիքների հաճախությունների տարբերությունը մարդն ընկալում է որպես գույների տարբերություն: «Մեներանգ» (միագույն) եզրույթը կիրառում են նաև այլ դիապազոնի (ԵԿ, ԱՄ, ռենտգեն. ևն) էլեկտրամագնիս. ճառագայթների համար:

ՄԵՆԵՐԳ, փոքրածավալ վոկալ ստեղծագործություն, հեղինակ. երգ՝ մենակատարման համար, մեծ մասամբ՝ նվագակցությամբ: Մ. օպերայում մոտենում է *արիային*, կամեր. երգարվ–ում՝ համադրվում *ռոմանսի* հետ: Մ–ի նմուշ են Շեյխի երգը (Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայից), «Օրորոցային»–ը (Ա. Հարությունյանի «Հայրենիք» կանտատից), Կոմիտասի մշակած ժող. երգերը ձայնի ու դաշնամուրի համար («Հով արեք», «Գարուն ա», «Քելեր, ցոլեր» ևն):

ՄԵՉՆԻԿՈՎ Միխայիլ Ալեքսանդրովիչ (1855–1935), ռուս. կենդանաբան, գիտ. դպրոցի հիմնադիր: ԽՍՀՄ ԳԱ պատվ. ակադ. (1926), ակադ. (1929): 1917–19–ին՝

ՄՊՀ ռեկտոր: «Ռուսաստանի թռչունները» (հ. 1–2, 1893–95) Ռուսաստանի թռչունների կարգաբանության և կենսբյան առաջին քննադատ. ամփոփագիրն է: Աշխ-ները վերաբերում են կենդանաաշխարհագրությանը, հնէարկտիկային, համեմատ. անատոմիային, դարվինիզմին:


ՄԵՆԹՈԼ, 3-մեթիլ -6-իզոպրոպիլցիկլոհեքսանոլ, դաղձի հոտով, կծվահամ, անգույն, մաշկի վրա սառեցնող ազդեցությամբ բյուրեղ. նյութ է, $t_{հալ.}$՝ 43–44°C: Դաղձի եթերայուղի հիմն. բաղադրիչն է, մտնում է դեղանյութերի (օր.՝ վալիդոլի), բաղադրության մեջ: Մ. թույլ ցավազրկող է և ախտահանիչ: Կիրառվում է սննդարդյան, օծանելիքի արտադր-յան մեջ և կոսմետիկայում:

ՄԵՆԻԵ (Meunier) Կոնստանտեն Էմիլ (1831–1905), բելգիացի քանդ., նկարիչ: Կերտել է բանվորների ընդհանրացված, հաճախ՝ հերոսականացված կերպարներ («Հանքահոր», բազմաֆիգուր եռանկար, մոտ 1878, «Սիճահար», 1885, «Ձուլողը», 1886, «Բեռնակիր», մոտ 1905, վերջին 3-ը՝ քանդակներ):


ՄԵՆԻՆԳԻՏ, տես *Ուղեղապատյանաբորբ*:

«ՄԵՆԻՊՊՈՍՅԱՆ ԵՐԳԻՉՆԱՆՔ», անտիկ գրկ-յան ժանր: Առանձնանում է բանաստեղծության և արձակի, կոմիկականի և լրջության, փիլ. դատողության և երգիծ. ծաղրի ազատ միավորմամբ, ընդհ. ծաղրանմանության հաստատմամբ, ինչպես նաև ֆանտաստիկ իրադրությունների պատկերմամբ (օր.՝ թռիչք երկինք, վայրընթաց դժոխք, զրույց ննջեցյալի հետ), որը ազատ, առանց պայմանականությունների դրսևորման հնարավորություն է տալիս: Ժանրի հիմնադիրը Մենիպոսն (մ. թ. ա. III դ-ի 2-րդ կես) է: «Մ. ե.»-ով են ստեղծագործել Սենեկա Կրտսերը, Պետրոնիոսը, Լուկիանոսը, նոր ժամանակներում՝ Ֆ. Ռաբլեն, Ֆ. Մ. Դոստոևսկին, Մ. Ա. Բուլգակովը և ուր.:

ՄԵՆԻՍԿ (հուն.՝ meniskos – կիսալուսին), 1. (ֆիզ.) հեղուկի ազատ կոր մակերևույթ՝ նեղ (մազանոթ.) խողովակի ներսում կամ հարթ պատի, բարակ թելի մոտ: Գոգավոր Մ. առաջացնում է պատերը թրջող հեղուկը (օր.՝ ջուրը և ապակին, նկ.՝ ձախից), ուռուցիկ Մ.՝ չթրջող հեղուկը (օր.՝ սնդիկը և ապակին, նկ.՝ աջից): 2. (Բժշկ.) **հոդասկավառակ**, ծնկահոդի ներքին և արտաքին մանգաղաձև աճառները, որոնք հարթում են հոդը կազմող ոսկրերի թեքությունների անհամապատասխանությունը և մեղմում ցնցումները հոդերում: 3. **Մ. օպտիկայում**, կորության նույն ուղղվածությունն ունեցող 2 գնդային մակերևույթներով սահմանափակված ոսպնյակ: Մ., որի հաստությունը մեջտեղում ավելի մեծ է, քան եզրերում, կոչվում է դրական (հավաքող ոսպնյակ), հակառակ պարամետրով Մ.՝ բացասական (ցրող ոսպնյակ): Մ. փոքրացնում է օպտիկ. համակարգի *աբեռացիան*:



ՄԵՆԻՍԿԱՅԻՆ ԱՍՏՂԱԴԻՏԱԿ (տեխ.), հայելաոսպնյակ. աստղադիտակ, որի օպ-



Պարզագույն մենիսկային համակարգի օպտիկական սխեման (F - համակարգի կիզակետը)

տիկ. համակարգի հիմն. տարրերն են *մենիսկը* և գոգավոր-գնդաձև հայելին: Ստեղծել է Դ. Դ. *Մաքսուտովը* (1941):

ՄԵՆՀԻՐ (բրետոն.՝ men – քար և hir – երկար), նախնադար. պաշտամունք. հուշակոթող: Ուղղահայաց կանգնեցված անմշակ (կամ կոպտատաշ) քարեր (բարձր.՝ 3–20 *մ*, զանգվածը՝ 300 *տ*): Հաճախ հանդիպում են *դոլմենների* և *կրոմլեխների* հետ: Հայաստանում Մ-ներ հայտնաբերվել են Արագածի լանջերին, Շիրակում, Զանգեզուրում:

ՄԵՆՆՅՈՒԿ Գեորգի Նիկոլայի (Ջորջե Մենյուկ, 1918–1987), մոլդավ գրող: Մոլդավիայի ժող. գրող (1982): Հեղինակ է «Ներքին տիեզերական աշխարհ» (1939), «Ընտիր բանաստեղծություններ» (1958) բանաստեղծությունների, «Վերջին վագոնը» (1965), «Դելֆին» (1969), «Լերայի ժամանակը» (1969) պատմվածքների ժողովների և այլ գործերի: Հայ. հրատարակվել է «Կաչաղակի խնջույքը» (1971) բանաստեղծությունների և չափածո հեքիաթների ժող-ը: Մոլդ. ԽՍՀ Պետ. մրց. (1972):

ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐ, քաղ. խմբակցության ներկայացուցիչներ ՌՍԴԲԿ-ի մեջ, 1917-ից՝ ինքնուրույն քաղ. կուս-յուն՝ ՌՍԴԲԿ: «Մ.» առանձնացել են ՌՍԴԲԿ II համագումարում (1903)՝ որպես փոքրամասնություն (ռուս.՝ меньшинство) *բոլշևիկների* համեմատությամբ: Գլխ. առաջնորդներն ու գաղափարախոսներն են Յ. Օ. Մարտովը, Ա. Ս. Մարտինովը, Պ. Բ. Աքսելրոդը, Գ. Վ. Պլեխանովը: Չեն ընդունել *Հոկտեմբերյան հեղափոխությունը*, համարել են, որ Ռուսաստանը դեռ պատրաստ չէ *սոցիալիզմի* համար: 1923-ին անցել են ընդհատակ, 1925-ից ենթարկվել բռնաճնշումների: 1931-ի մարտին դատապարտվել են 1928-ին ստեղծված Մ-ի «ՌՍԴԲԿ ԿԿ-ի միութենական բյուրոյի» խորհրդ. իշխանության դեմ պայքարի շինծու պատճառաբանությամբ և լուծարվել:

ՄԵՆՇԻԿՈՎ Օլեգ Եվգենևիչ (ծ. 1960), ռուս. դերասան, ռեժ.: ՌԴ ժող. արտիստ (2003): Աշխատել է Մոսկվայի տարբեր թատրոններում: 2012-ից՝ Մոսկվայի Մ. Ն. Երմոլովայի անվ. դրամատիկ. թատրոնի գեղ. ղեկ. և տնօրեն: Ստեղծել է նուրբ և պլաստիկ կերպարներ (Գանյա՝ «Ապուշ»՝ ըստ Ֆ. Մ. Դոստոևսկու, Սերյոժա՝ Է. Ա. Ռաձինսկու «1981 թվականի սպորտային տեսարաններ», Կալիգուլա՝ Ա. Քամյուի «Կալիգուլա», Սերգեյ Եսենին՝ Մ. Շերմանի «Երբ նա պարում էր», բեմ.՝ Լոնդոնում, ևն): «Թատերական ընկերություն 814» (1995), «Օլեգ Մենշիկովի թատերական ընկերության» (2007) հիմնադիրը: Նկարահանվել է «Պոկրովյան դարպասներ» (հեռուստաֆիլմ), «Թռիչքներ երազում և արթմնի», «Արևից հոգնածները», «Կովկասի գերին», «Սիբիրյան սափրիչը», «Դոկտոր Ժիվագո» (հեռուստասերիալ) և այլ ֆիլմերում: ՌԴ Պետ. մրց. (1995, 1997, 1999):

ՄԵՆՇՈՎ Վլադիմիր Վալենտինովիչ (ծ. 1939), ռուս. դերասան, կինոռեժ.: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1984): ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1989): Նկարահանվել է «Վերջին հանդիպում», «Սեփական կարծիք» և այլ ֆիլմերում, նկարահանել «Վիճակախաղ» (1977) «Մոսկվան արցունքներին չի հավատում» (1980, ԽՍՀՄ Պետ., «Օսկար» մրց-ներ, երկուսն էլ՝ 1981), «Սեր և աղավնիներ» (1984), «Շիոլի-միոլի» (1995), «Աստվածների նախանձը» (2000) և այլ կինոնկարներ: 1987-ից՝ «Մոսֆիլմին» կից «Ժանր» ստուդիայի ղեկ.:

ՄԵՆՇՈՒՏԿԻՆ Նիկոլայ Ալեքսանդրովիչ (1842–1907), ռուս քիմիկոս: Աշխ-ները վերաբերում են օրգ. ռեակցիաների կինետիկային: Հայտնաբերել է լուծիչի ազդեցությունը քիմ. ռեակցիայի արագության վրա: Հեղինակ է «Վերլուծական քիմիա» (ռուս., 1871) և «Քիմիական պատկերացումների զարգացման ակնարկ» (1888)՝ քիմիայի պատմությանը վերաբերող առաջին ռուս. աշխ-յան: Ռուս. քիմ. ընկ-յան հիմնադիրներից է (1868):

ՄԵՆՈՄԱԳԻԱ (< հուն. men – ամիս և rhegnymi – պատռվել), դաշտան. արյունահոսության ուժեղացումը և երկարատևությունը: Արգանդի հիվանդությունների ախտանշան է: Տես նաև *Արգանդային արյունահոսություն*:

ՄԵՆՈՎՇՉԻԿՈՎԱ Նինա Իվանովնա (ծ. 1934), ռուս. բալետի արտիստուհի: ՌԽՖՍՀ (1967), ԽՍՀՄ (1973) ժող. արտիստ: 1953–56-ին՝ Պերմի Պ. Ի. Չայկովսկու անվ., 1956–83-ին՝ Սվերդլովսկի ՕԲԹ-ների մենապարուհի (Էգինա, Ֆրիգիա՝ Ա. Խաչատրյանի «Սպարտակ», Ժիզել՝ Ա. Ադանի «Ժիզել», ևն):

ՄԵՆՈՏԻ (Menotti) Ջան Կառլո (1911–2007), ամերիկացի կոմպոզիտոր, լիբրետիստ (ծագումով՝ իտալացի): Հեղինակ է (նաև լիբրետոների) «Մեդիում» (1945), «Հեռախոս» (1946), «Դեսպան» (1949), «Լաբիրինթոս» (1963) օպերաների, նաև բալետների, «Ապոկալիպսիս» (1951) սիմֆ. պոեմի և այլ գործերի: 1958-ին Սպոլետտոյում հիմնադրել է «Երկու աշխարհների փառատոնը» (իտալ. և ամերիկ. երաժշտություն, ղեկ.՝ մինչև 1967-ը): Պուլիցերյան մրց. (1950, 1955):

ՄԵՆՈՐԱ, յոթթևանի աշտանակ, հուդայականության հնագույն խորհրդանիշներից: Սկզբնապես օգտագործվել է պատարագների ժամանակ: Մ. նկարագրվում է Հին կտակարանում: Խորհրդանշում է Փոքր Ասիայի 7 եկեղեցիները, 7 մոլորակներն ու Արարման 7 օրերը:

ՄԵՆՍՖԻԼԴ (Mansfield) Քեթրին (Քեթլին Բիչեմ, 1888–1923), նորզելանդացի անգլիագիր գրող: Հոգեբ. նովելների վարպետ («Գերմանական գիշերօթիկ դպրոցում», 1911, «Աղավնյակի բույնը», 1923, «Մանկական ինչ-որ բան», 1924, «Մի գավաթ թեյ», հայ.՝ 1978, ժող-ներ):

ՄԵՆՑԵԼ (Menzel) Ադոլֆ ֆոն (1815–1905), գերմանացի գեղանկարիչ, գրաֆիկ: Հեղինակ է ռեալիստ. և արտահայտիչ պատկերազարդումների (Ֆ. Կուգլերի «Ֆրիդրիխ Մեծի պատմությունը», 1839–1842), բնապատկերների, ժանր. նկարների («Պատշգամբով սենյակ», 1845, ևն):

ՄԵՆՑԵԼ Իրժի (ծ. 1938), չեխ ռեժ., սցենարիստ, դերասան: Նկարահանել է «Հատուկ հսկողության գնացքներ» (1966), «Արտույտները թելի վրա» (1969, ցուցադրվել է 1989-ից), «Ես սպասարկել եմ Անգլիայի թագավորին» (2006) և այլ ֆիլմեր: Իր մի քանի կինոնկարների սցենարի հեղինակն է:

ՄԵՆՈՒՄ, **Մինուա** (ծ. թ. անհտ–մ. թ. ա. մոտ 786), *Վանի թագավորության* արքա՝ մ. թ. ա. մոտ 810-ից: *Իշպուինիի* որդին, գահակիցը և հաջորդը: Համատեղ թագավորության տարիներին ընդարձակվել են երկրի սահմանները: Մ. կառուցել է *Մենուախինիլի* ք-ամրոցը, Հին Արևելքի պատմության մեջ հայտնի շուրջ 80 *կմ* երկ-

յան ջրանցքը (տես ***Մենուայի ջրանցք***), որը ոռոգելու և խմելու ջուր է մատակարարել մայրաքաղաք Տուշպային (Վան):

ՄԵՆՈՒԱԽԻՆԻԼԻ, ***Վանի թագավորության*** բք, ռազմ., վարչատնտ. և մշակութ. կենտրոն: Կառուցել է ***Մենուան*** (մ. թ. ա. 810–786) Մեծ Մասիսի ստորոտին՝ Երասխի աջ ափին (այժմյան Դաշբուռուն գ–ի մոտակայքում): Մ. դարձել է Հայկ. լ–աշխարհի հս. շրջանները պետության մեջ միավորելու հենակետ: Համանուն մի այլ քաղաք Մենուան կառուցել է Վանա լճի հվ. ափին:

ՄԵՆՈՒԱՅԻ ՋՐԱՆՑՔ, **Շամիրամի ջրանցք**, կառուցել է ***Մենուա*** թագավորը, հավանաբար՝ մ. թ. ա. IX դ–ի վերջ–VIII դ–ի սկզբին՝ Տուշպա (Վան) ք–ին խմելու և ոռոգելու ջուր մատակարարելու նպատակով: Երկ.՝ 80 *կմ*, լայն.՝ 4,5 *մ*, խոր.՝ 1,5 *մ*: Սկիզբ է առնում Հայոց ձոր գվթ–ի Վերին Մժնկերտ գ–ի մոտից, որտեղ ժայռերի տակից բխում են բազմաթիվ ջրառատ աղբյուրներ:

ՄԵՆՈՒԵՏ (ֆրանս.՝ menuet, < menu – փոքրիկ), 1. հնագույն ֆրանս. ժող. (XVII դ–ի կեսից՝ պարահանդես.) պար: Տարածվել է Եվրոպայում:

ՄԵՆՈՒՀԻՆ (Menuhin) Իեհուդի (1916–1999), ամերիկացի ջութակահար (ծագումով՝ հրեա): Ճանաչվել է Յ. Բրամսի, Ֆ. Մենդելսոնի, Է. Էլգարի կոնցերտների, նաև Յ. Ս. Բախի, Վ. Ա. Մոցարտի, Լ. վան Բեթհովենի և ուր. երկերի ինքնատիպ մեկնաբանմամբ: ԵՀՊ–ի ավարտից (1945) հետո առաջին ամերիկացի երաժիշտն էր, որը համերգներով շրջագայել է Եվրոպայում: Կազմակերպել է երաժշտ. փառատոներ, հիմնադրել երաժշտ. դպրոց (1963, Ստոկ դ'Աբեռնոն, Մեծ Բրիտանիա): Եղել է ՅՈՒՆԵՍԿՕ–ի Միջազգ. երաժշտ. խորհրդի նախագահ (1971–75):

Է. Սիմենսի (1984), Գ. Գուլդի (1990), Հ. Վոլֆի (1991) մրց–ներ:

«ՄԵՆՔ ՄԵՐ ՄԱՄԻՆ», պատմամշակութ. հանդես (2005–ից, Երևան): Հիմնադիր–տնօրեն՝ Պավել Սարգսյան:

ՄԵՇԱԼԿԻՆ Եվգենի Նիկոլաևիչ (1916–1997), ռուս. վիրաբույժ: ՌԲԳԱ ակադ. (1978): Սոց. աշխ. հերոս (1976): ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1966): Աշխ–ները վերաբերում են սրտի և խոշոր անոթների վիրաբուժությանը: Լենինյան մրց. (1960):

ՄԵՇՉԱՆԻՆՈՎ, Իվան Իվանովիչ (1883–1967), ռուս լեզվաբան, ինազետ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1932): Սոց. աշխ. հերոս (1945): Հետազոտել է Կովկասի և Փոքր Ասիայի մեռած, նաև լեզգ. լեզուները: Հեղինակ է ընդհ. լեզվաբ–յանը վերաբերող աշխ–ների: Հնագիտ. պեղումներ է կատարել ԼՂ–ում, Նախիջևանում: ԽՍՀՄ Հյուսիսի և Կովկասի՝ գիր չունեցող ժողղ–ների լեզուների ուսումնասիրության կազմակերպիչներից: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943, 1946):

ՄԵՇՉԵՐՅԱԿՈՎ, Միխայիլ Գրիգորևիչ (1910–1994), ռուս ֆիզիկոս: ՌԳԱ թղթ. անդամ՝ 1953–ից: Աշխ–ները վերաբերում են միջուկ. ֆիզիկային, բարձր էներգիաների ֆիզիկային: Խորհրդ. առաջին ***սինքրոցիկլոտրոնի*** (680 *ՄէՎ*) շին–յան ղեկ–ներից: ԽՍՀՄ Պետ. մրց. (1951, 1953):

ՄԵՇՉԵՐՄՅԻ Վլադիմիր Պետրովիչ (1839–1914), ռուս հրապարակախոս, գրող, իշխան, իսկական պետ. խորհրդական (1873): Ն. Մ. ***Կարամզինի*** թոռը: «Գրաժդանին» (ռուս., 1872–78, 1882–1914) պահպանող. հանդեսի և այլ պարբ–ների հրտ.: 1880–90–ական թթ–ի «հակաբարեփոխական» շարժման գլխ. գաղափարախոսներից: Հեղինակ է բարձրաշխարհիկ կյանքին նվիրված երգիծ. վեպերի ու վիպակների, «Հուշեր»–ի (մաս 1–3, 1897–1912):

ՄԵՇՏԵՐՀԱԶԻ (Mesterházi) Լայոշ (1916–1979), հունգար գրող: Հեղինակ է «Վկայություն» (1955–56) վեպ–դյուցազներգության, 1920–ական թթ–ի Հունգարիայի մասին պատմող «Մի քանի քայլ այն կողմ սահմանն է» (1958) վեպի, «Պրոմեթևսի հանելուկը» (1973) փիլ. վեպ–էսսեի, նաև պիեսների, նովելների:

ՄԵՇՏՈՒՀՅԱՆ, **Մեշտուտցյան**, Վարդան (Վիկտոր) Գևորգի (1869–1942), հրապարակախոս, գրող, պատմաբան, խմբ.: Վառնայում հիմնադրել է «Շարժում» (***Երուխանի*** հետ, 1898–1907) թերթը, Բուխարեստի՝ «Արաքս» (1905), «Նոր արշալոյս» (1922–24), «Փարոս» (1924) պարբ–ների խմբ., «Աուրորա» (ռումհ., 1906) ամսագրի, «Արարատ» (ռումհ., 1924–42) հայագիտ. հանդեսի հրտ.: Հեղինակ է «Նախագծեր և ֆիլմեր» (1913) պատմվածքների ժող–ի, «Ջետտա» (1916) վեպի, ուղեգրությունների, «Հայոց պատմություն» (հ. 1, 2, 1923, 1926) պատմաքնն. երկի (բոլորը՝ ռումհ.): Կատարել է թարգմ–յուններ (հայ–ից՝ ռումհ., ֆրանս–ից՝ ռումհ.):

ՄԵՉՉՆԻԿՈՎ, Իլյա Իլյիչ (1875–1916), ռուս կենսաբան, ախտաբան, համեմատ. ախտաբանության, էվոլյուցիոն սաղմնաբանության և իմունաբանության հիմնադիրներից, գիտ. դպրոցի ստեղծող: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. (1883), պատվ. (1902) անդամ: 1888–ից՝ Լ. Պաստյորի անվ. ինստ–ում (Փարիզ): Ն. ***Գամալեյայի*** հետ հիմնադրել է (1886) Ռուսաստանում 1–ին բակտերիաբան. կայանը: Հայտնագործել է ***ֆագոցիտոզի*** երևույթը, շարադրել է իմունիտետի ֆագոցիտային տեսությունը: Ստեղծել է բազմաբջիջ օրգանիզմների ծագման տեսություն:

Նոբելյան մրց. (1908, Պ. ***Էռլիխի*** հետ):

ՄԵՋԻՆՅԱՆ Արտեմ Մարգարի (1913–1998), քամանչահար: ՀՀ ժող. արտիստ (1986): 1937–46–ին՝ Հայֆիլհարմոնիայի ժող. գործիքների նվագախմբի մենակատար, 1946–92–ին՝ հեռուստառադիոյի ժողգործիքների կոնցերտմայստեր: Հեղինակ է ժող. երաժշտության ոճով երգերի:

Անդրկովկաս. օլիմպիադայի (1934, Թիֆլիս) և Համամիութ. (1939, Մոսկվա) մրցույթի դափնեկիր: ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան:

ՄԵՋԼՈՒՄՅԱՆ Գրետա Իսկանդարի (ծ. 1953), դերասանուհի: ՀՀ վաստ. արտիստ (2004): Պրոֆ. (2013): 1975–96–ին՝ Վանաձորի դրամատիկ., 1996–ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնների դերասանուհի (Խաթուն՝ Ա. Պետրոսյանի «Ես մի ծառ եմ ծիրանի», Պռնսիա՝ Ֆ. Գարսիա Լորկայի «Բեռնարդա Ալբան և իր աղջիկները», Անթառամ՝ Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը», Իրինա՝ Ա. Պ. Չեխովի «Երեք քույր», Իշխանուհի՝ Լ. Շանթի «Հին աստվածներ», ևն): Հանդես է եկել նաև մոնո–ներկայացումներով (Հ. Մաթևոսյանի «Ծառերը», Ն. Շահնազարյանի «Թափորը» ևն): Նկարահանվել է «Ընդհատված մանկություն», «Թևանիկ», «Ես եմ» ֆիլմերում:

«Վահագն» (2003), Մ. Սիմոնյանի անվ. «Արտիստ» (2001), «Իրան–Ջամի» մոնո–թատեր. միջազգ. փառատոնի դիպլոմ և մրց. (2003), «Թեսպիս» մոնո–թատեր. փառատոնի 3–րդ (2004, Գերմանիա), ՀԹԳՄ «Արտավազդ» (2017) մրց–ներ, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2013):

ՄԵՌԵԼՈՅ, **Հիշատակ մեռելոց**, ննջեցյալներին նվիրված աղոթքի և հիշատակության օրեր: Կատարվում են ***Տաղավար*** տոներին հաջորդող երկուշաբթի օրերը, ննջեցյալների հոգիների հանգստության համար մատուցվում է ***Պատարագ***: Հավատացյալ ժողղ–ն այցելում է հարազատների շիրիմներին, խունկ ծխում:

ՄԵՌԼ (Merle) Ռոբեր (1908–2004), ֆրանսիացի գրող: Հեղինակ է համակենտրոնացման ճամբարի պարետ էսէսականի հոգեբ–յունը վերակերտող «Մահն իմ արհեստն է» (1952, հայ.՝ 2012), հակագաղութատիր. «Կղզին» (1962), Ֆրանսիայում ձախ արմատականության և հակամշակույթի գաղափարներով համակված երիտասարդ. շարժման վերաբերյալ «Ապակու հետևում» (1970) վեպերի, ատոմ. աղետի սպառնալիքի մասին «Մալվիլ» (1972) վեպ–ուտոպիայի, նաև «Ֆրանսիայի ճակատագիրը» (1978), «Մեր երիտասարդ տարիներին» (1979) պատմավեպերի, «Սիզիփոսը և մահը» (1950) և այլ փիլ. պիեսների:

ՄԵՌՅԱԼ ԾՈՎ, անհոսք աղի լիճ Հորդանանում և Իսրայելում՝ Գհոր (Էլ Գոր) տեկտ. իջվածքում: Մակերեսը՝ 810 *կմ*², երկ.՝ 67 *կմ*, խոր.՝ 376 *մ*: Ծ. մ–ից ցածր է 422 *մ* (2009, ափը ցամաքի ամենացածր կետն է): Ջրի աղիությունը՝ 260–300 ‰, առանձին տարիների՝ մինչև 340 ‰: Բարձր աղիության հետևանքով օրգ. աշխարհը բացակայում է (բացառությամբ մանրէների որոշ տեսակների): Մ. ծ–ի մեջ է թափվում ***Հորդանան*** գետը: Արդյունահանվում են տարբեր հանք. աղեր:

«ՄԵՌՅԱԼ ԾՈՎԻ ՁԵՌԱԳՐԵՐ», ***Մեռյալ ծովի*** արմ. ափի քարայրներում հայտնաբերված եբր., արամերեն, նաբաթ., հուն., լատ., ասոր. ձեռագրեր՝ գրված մագաղաթի, խեցու, պղնձի, փայտի վրա: Առավելապես արժեքավոր են ***Կումրանի ձեռագրերը***, Մասադայի արխիվը (Մասադա ամրոց, 1963–65–ի պեղումներ), հրեական անապատի քարայրների ձեռագրերը (աստվածաշնչյան թեմաներով, նաև գործն., տնտ., իրավաբ. փաստաթղթեր, 1952, 1960–61–ի պեղումներ) ևն: Հրատարակվել է միայն Վադի–Մուրաբբաթի արխիվը:

ՄԵՍԱՊԵՐԵՆ, իլլիրական ցեղերի լեզուն: Պատկանում է ինդեվրոպ. լեզվաընտանիքին: Հայտնի է մ. թ. ա. VI–I դդ–ի արձանագրություններով:

ՄԵՍԵԴԻ, հայ հոգևոր երգի տեսակ, երեկոյան սաղմոսերգության կցուրդ. զարգացել է VIII–XV դդ–ում: Մ–ների առաջին հեղինակը հավանաբար ***Գրիգոր Գոգիկն*** է:

ՄԵՍԵՐԵՐ Ասաֆ Միխայլովիչ (1903–1992), ռուս. բալետի արտիստ, բալետմայստեր (ծագումով՝ հրեա): ՌԽՖՍՀ (1951), ԽՍՀՄ (1976) ժող. արտիստ: Լատվ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1953): Ս. Մ. ***Մեսերերի*** եղբայրը: 1921–ից՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մենապարող (Բազիլ՝ Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ», Ջիգֆրիդ՝ Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճ», ևն), 1946–ից՝ մանկավարժ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1947):

ՄԵՍԵՐԵՐ Սուլամիթ Միխայլովնա (1908–2004), ռուս. բալետի արտիստուհի, մանկավարժ (ծագումով՝ հրեա): ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1962): Ա. Մ. ***Մեսերերի*** քույրը: 1926–50–ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մե–

նապարուհի (Կիտրի՝ Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ», Ավրորա՝ Պ. Ի. Չայկովկսու «Կարապի լիճ», ևն), 1960–ից՝ «Տոկիո-բալլե» խմբի պարուհի, 1980–ից՝ Լոնդոնի «Քովենտ Գարդեն» թատրոնի մանկավարժ-փորձավար:

ՄԵՍԹՐ (Maistre) Ժոզեֆ Մարի դը (1753–1821), կոմս, ֆրանսիացի փիլ., հրապարակախոս, դիվանագետ, եվրոպ. պահպանողականության հիմնադիրներից: «Դատողություններ Ֆրանսիայի մասին» աշխ-յան մեջ (1797) Մ. XVIII դ–ի Ֆրանս. հեղ-յունը համարել է «սատանայական», սակայն այն դիտել է որպես քավչական զոհաբերության ձև: 1803–17–ին եղել է Ռուսաստանում, որտեղ գրել է իր հիմն. աշխ-ները՝ «Պապի մասին» (1819), «Սանկտ Պետերբուրգյան երեկոներ» (1821) ևն:

ՄԵՍԻԱ (հին հրեերեն՝ masiah – օծյալ), Աստծու ուղարկած փրկիչ մի շարք կրոններում, գլխավորապես՝ հուդայականության և քրիստոնեության մեջ, որը հաստատելու է Աստծու հավերժ արքայությունը: Քրիստոնեության մեջ Մ. Հիսուս Քրիստոսն է: Հնում և միջնադարում ժող. շարժումների առաջնորդները երբեմն իրենց «Մ.» են հռչակել: Մահմեդ. երկրներում «Մ.» են անվանում ***մահդիին***:

ՄԵՍԻԼԱՅԱՆ Հայկազ Կոսմոսի (1917–2004), փողհար, դիրիժոր: ՀՀ վաստ. արտիստ (1962): Պրոֆ. (1983): 1937–47–ին (ընդմիջումով)՝ Մոսկվայի Մեծ թատրոնի և Համամիութ. ռադիոյի սիմֆո-ջազի, 1947–64–ին՝ Հայաստանի սիմֆ. նվագախմբի, ԵՕԲԹ-ի փողհար-մենակատար, 1964–ից՝ «Երևան» փող., 1970–88–ին՝ Հայաստանի փող. (հիմնադիրներից) նվագախմբերի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: Համամիութ. մրցույթի 1–ին կարգի դիպլոմ (1941, Մոսկվա):

ՄԵՍԽԵԹ, մեսխեների (վրաց. ցեղ) երկիրը, Հվ. Վրաստանի (Ախալցխայի շրջան) մի մասի պատմ. անվանումը: Մեսխեթցի թուրքերի ներկա խնդիրը կապված է այդ տարածաշրջանից 1944–45–ին արտաքսված մահմեդ. բնակչության հետ:

ՄԵՍԽԵԹԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, **Աջարա-իմերեթյան լեռնաշղթա**, Փոքր Կովկասի լ–շղթաներից Վրաստանում: Ձգվում է Սև ծովի աջար. ափից մինչև Կուր գետի Բորժոմի կիրճը: Երկ.՝ 150 *կմ*, բարձր.՝ մինչև 2850 *մ* (Մեփիսծղարո լ.):

ՄԵՍՄԵՐԻԶՄ, **կենդանամագնիսական-նություն**, հայեցակարգ բժշկագիտ-յան մեջ, որի հիմքը «կենդանի մագնիսական-նություն» հասկացությունն է: Առաջարկել է ավստրիացի բժիշկ Ֆ. Մեսմերը (F. Mesmer, 1734–1815) XVIII դ–ի 4–րդ քառորդին: Մ–ի շնորհիվ կարելի է փոխել օրգանիզմի վիճակը, այդ թվում՝ բուժել հիվանդությունները:

ՄԵՍՅԱՆ Գևորգ Մնացականի (1883–1937), գրող: Հեղինակ է «Զարի» (1911, պոեմ), «Խրճիթում» (1926), «Մայրը» (1927), «Ճուտիկը հրշեջ» (1929), «Պատմվածքներ» (1931), «Մեր ծիծեռնակները» (1961) և այլ ժող–ների: Կատարել է թարգմ–յուններ: Անհիմն բռնադատվել է և գնդակահարվել, հետմահու՝ արդարացվել:

ՄԵՍՅԱՆ Կարեն Զաքարի (1933–2010), կինոօպերատոր: 1956–ից՝ Հայֆիլմի օպերատոր (գեղ.՝ «Սարոյան եղբայրներ», 1968, Սարգիս *Գևորգյանի* հետ, «Մենք ենք, մեր սարերը», 1969, «Հայրիկ», 1972, ևն, վավերագր.՝ «Իմ Երևան», 1966, ռեժ.՝ Մ., «Հակոբ Հովնանյան», 1967, «Դուդուկ», 1975, «Գևորգ Էմինն», 1989): 1990–ից՝ ԱՄՆ–ում: ՀԽՍՀ Պետ. մրց. (1970):

ՄԵՍՉՅԱՆ Արթուր (Արտաշես) Ստեփանի (ծ. 1949), ճարտ., երաժիշտ: Հեղինակ. երգի և հայկ. ռոք երաժշտության հիմնադիրներից է: Ստեփան *Մեսչյանի* որդին: ՀԽՍՀ ՆԽ ընդունելությունների տան (1985, Երևան), Մոսկվայի Հայ մշակույթի տան վերակառուցման (1981–84), «Զվարթնոց» օդանավակայանի (համահեղ., 1981), Մոնդ–ի նոր մասնաշենքի (1988–89, կառուցվել է 2007–11–ին), Կոմիտասի թանգարան–ինստ–ի շենքի (2015) նախագծերի հեղինակ: Երևանում հիմնադրել և ղեկավարել է «Առաքյալներ» ռոք–խումբը (1967–78): Բազմաթիվ երգերի հեղինակ է և կատարող:

Տարվա լավագույն ստեղծագործության հանրապետ. 1–ին (1979, Բյուրականի ճամբարի համար), Պետ. (2013) մրց–ներ, ՀՀ «Սր Մեսրոպ Մաշտոց» շքանշան (2011):

ՄԵՍՉՅԱՆ Ստեփան Ռուբենի (1922–2012), երկրատեխնիկ: Տեխ. գիտ. դ–ր (1965), պրոֆ. (1968): Կավ. գետնահողերի փորձարար. հոսքաբանության գիտ. ուղղության հիմնադիրներից: Արթուր *Մեսչյանի* հայրը: Առաջարկել է գետնահողերի սողքի նոր մաթ. մոդել (1960), ձևակերպել գետնահողերի սողքի ընդհանրացված օրենք, մշակել պետ. չափորոշիչ. Հայաստանում գործողության մեջ է դրվել 1999–ից: ՀՀ նախագահի մրց. (2006):

ՄԵՍՍԱ, (ֆրանս.՝ messe, լատ.՝ missa – հղել, ներել), վոկալ–խմբերգ. (հաճախ՝ մենակատարներով) կամ վոկալ–գործիք. բազմամաս երաժշտ. ստեղծագործության ժանր (համապատասխանում է քրիստ. ուղղափառ եկեղեցու պատարագին): Տարբերում են Մ–ի կարճ (missa brevis)՝ 2–3–մասանի, և հանդիսավոր (missa solemnis) տեսակները: Մ–ներ են գրել Գ. Դյուֆային, Ժ. Դեպրեն, Օ. Լասսոն, Պալեստրինան, Յ. Ս. Բախը, Վ. Ա. Մոցարտը, Լ. վան Բեթհովենը և ուր.: Հոգեհանգստյան Մ. կոչվում է ռեքվիեմ:

ՄԵՍՍԵՐՇՄԻՏ (Messerschmitt) Վիլլի (1898–1978), գերմանացի ավիակոնստրուկտոր և արդյունաբերող: Ստեղծել է բազմաթիվ ռազմ. ինքնաթիռներ, ճախրաթիռներ, այդ թվում՝ կործանիչներ՝ Մե–109 (Գերմանիայի ՌՕՈՒ–ի հիմն. կործանիչը՝ 1935–45–ին), Մե–110, Մե–262 (ռեակտիվ):

ՄԵՍՍԻ (Messi) Լիոնել Անդրես (ծ. 1987), արգենտինացի ֆուտբոլիստ: Արգենտինայի հավաքականի կազմում՝ օլիմպ. խաղերի չեմպիոն (2008): «Բարսելոնա» ակումբի կազմում՝ ՈՒԵՖԱ–ի չեմպիոնների լիգայի (2006, 2009, 2011, 2016) և ՈՒԵՖԱ–ի սուպերգավաթի (2009, 2011, 2015) հաղթող, Իսպանիայի չեմպիոն (2005, 2006, 2009, 2010, 2011, 2012, 2015), աշխարհի ակումբ. առաջնության հաղթող (2009, 2012, 2015): «Ոսկե գնդակ» մրց. (2009, 2010, 2011, 2012, 2015):

ՄԵՍՍԻԱՆ (Messiaen) Օլիվիե (1908–1992), ֆրանսիացի կոմպոզիտոր, երգեհոնահար, երաժշտագետ: Հեղինակ է «Սուրբ Ֆրանցիսկոս Ասսիզացի» (1983) օպերայի, «Տուրանգալիլա» (1948) սիմֆոնիայի, «Իմ երաժշտական լեզվի տեխնիկան» (հ. 1–2, 1944) աշխ–յան: Մ–ի բազմաթիվ երգեր առնչվում են քրիստ. թեմաներին, որոնց բնորոշ են բարդ լադ. կառուցվածքներ և ռիթմ. համակարգեր:

Էռնստ Սիմենսի (1975), Էրազմի (1971) միջազգ. մրց–ներ:

ՄԵՍՍԻՆԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Իտալիայի հնագույն համալսարաններից: Հիմնադրվել է 1548–ին: 2016–ին ուներ շուրջ 40 հզ. ուսանող:

ՄԵՍՐՈՊ Գևորգ (Տեր–Մեսրոպյան Գևորգ Պողոսի, 1881–1948), մանկավարժ, պատմաբան, բանասեր: 1908–22–ին, որպես տեսուչ և մանկավարժ, աշխատել է Կ. Պոլսի հայկ. դպրոցներում, միաժամանակ գլխավորել է պատրիարքարանի գաղտնի դիվանի գործունեությունը: 1923–ին Պլովդիվում (Բուլղարիա) հիմնադրել է Մեսրոպյան ճեմարանը, Սոֆիայում 1937–ին հրատարակել է «Հայելի աշխարհի» գիտամանկավարժ. պարբ–ը: Հեղինակ է «Հայ թարգմանիչները Բիւզանդիոնի մէջ» (1909), «Ուրաարտու կամ Հայաստանի նախաբնիկները եւ իրենց քաղաքակրթութիւնը» (1911), «Պատմութիւն հայ եկեղեցւոյ» (հ. 1–2, 1913–14) և այլ աշխ–ների:

ՄԵՍՐՈՊ (Մեսրոպյան) Լևոն Մեսրոպի (1880–1960), գրող, մշակութ. գործիչ: Հեղինակ է «Քերպելյան գիշերներ» (1946), «Կախարդող լեռը» (1955) և այլ վեպերի, «Մատաթ Ըեխ» (1946), «Օտարականը» (1959) պիեսների, «Քուրդիստան եւ քուրդերը» (1957) աշխ–յան: Պարսկ–ից հայ. է թարգմանել Օմար Խայամի քառյակները («Օմար Խայամ», 1923):

ՄԵՍՐՈՊ Ա. ԱՐՏԱԶԵՑԻ (ծ. թ. անհտ–1372), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1359–ից: Գումարել է Սսի 1361–ի ժողովը՝ կաթոլիկ. ծեսերի դեմ պայքարելու նպատակով: 1364–ին հիմնադրել է լեհահայոց արքեպիսկոպոս. թեմը:

ՄԵՍՐՈՊ ԵՐԵՑ, Վայոցձորեցի, X դ–ի մատենագիր: 967–ին գրել է *Ներսես Ա. Մեծի* վարքը և *Սմբատյանների* տոհմի պատմությունը, որտեղ արտացոլվել է հայ ազատագր. լեգենդի նախն. տարրերակը: Երկը հետագայում լրացվել է ընդմիջարկություններով, որոնք արտահայտում են լեգենդի ժամանակին համահունչ փոփոխությունները: 1–ին անգամ հրատարակվել է 1737–ին, վերահրատարակվել տարբեր խորագրերով, թարգմանվել ֆրանս. (1869):

ՄԵՍՐՈՊ ԽԻԶԱՆՑԻ, XVII դ–ի մանրանկարիչ: Ստեղծագործել է Նոր Ջուղայում, ծաղկել 30–ից ավելի ձեռագրեր: Առաջին Ավետարանը պատկերազարդել է 1604–ին (1975–ին աճուրդի է հանվել Լոնդոնում), վերջինը՝ 1651–ին: 1642–ին ծաղկած Ավետարանը պահվում է Մոնդ–ում (ձեռ. № 294):

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ, **սուրբ Մեսրոպ Մաշտոց** (մոտ 362–440), ***հայկական գրի*** ստեղծողը, հայագիր (հայկ.) դպրոցի հիմնադիրը և հայ–ի առաջին ուսուցիչը, հայ ինքնուրույն և թարգմ. գրկ–յան սկզբնավորողը (*Սահակ Ս. Պարթևի* հետ), լուսավորիչ, քրիստոնեության քարոզիչ, Հայ եկեղեցու վրդ., ՀԱԵ տոնելի սուրբ: 389–ին հաստատվել է Վաղարշապատում: Սանուկներին սկսել է դասավանդել ***դանիելյան նշանագրերով***, որոնք Ասորիքից բերել էր տվել *Վռամշապուհ* արքան, սակայն դրանք բավարար չէին ժամանակի հայ–ը լիարժեք արտահայտելու համար: Մ. Մ. աշակերտների հետ ուղևորվել է Ասորիք, եղել Ամիդում, Եդեսիայում, որտեղ էլ 405–ին ստեղծել է հայ–ի ինչյուն. համակարգը ճշգրտորեն արտահայտող նշանագրեր, Սամոսատում հմուտ հունագետ *Հռոփանոսի* օգնությամբ կատարելագործել է տառերի գծագրությունը,

Հովհան Եկեղեցացու և *Հովսեփ Պաղնացու* հետ ձեռնարկել Աստվածաշնչի հայ. թարգմ-յունը: Վերադառնալով հայրենիք՝ Մ. Մ. իր աշակերտների հետ երկրում ծավալել է ***Թարգմանչաց շարժումը***, Հայաստանում ստեղծել դպրոցներ (Մեսրոպյան), տարածել հայ գրչությունն ու հայերի կրթությունը: Մ. Մ. գրել է քարոզներ, ճառեր, ուղերձներ, շարականներ, որոնք հետո մտել են Շարակնոցի մեջ: Մ. Մ-ին, Սահակ Ա Պարթևին, Մովսես Խորենացուն և Հովհաննես Ա Մանդակունուն է վերագրվում առաջին ինքնուրույն հոգևոր երգերը՝ կցուրդները, նա հայ մասնագիտ. երգարվ-ի առաջին նմուշների հեղինակներից է: Սահմանվել են ՀԽՍՀ ԳԱ Մեսրոպ Մաշտոցի անվ. մրց., ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց», ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ», ԼՂՀ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանները:

ՄԵՍՐՈՊԱՎԱՆԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՎԱՆՔ, **Մեսրոպ Մաշտոց վանք**, ճարտ. համալիր Գողթն գվռ-ի Մեսրոպավան գ-ում (այժմ՝ Նախիջևանի ԻՀ Օրդուբադի շրջանի գ. Նասրվազ): Ըստ ավանդության՝ հիմնադրել է Գողթնի Շաբիթ իշխանը 456-ին: Պահպանվել է միայն քառամույթ գմբեթավոր հորինվածքով եկեղեցին:

ՄԵՍՐՈՊՅԱՆ Էվելինա Գուրգենի (1931–2015), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ դ-ր (1984), պրոֆ. (1986): Աշխ-ները վերաբերում են նոր տիպի օքսիդների սինթեզին և նրանց հիմքի վրա ֆունկցիոնալ տեղակալված γ-լակտոնների ստացմանը: Սինթեզել է N, O, S – պարունակող նոր տարացիկլ. միացություններ:

ՄԵՍՐՈՊՅԱՆ Մեսրոպ Տիգրանի (1920–1983), խմբավար: 1941–46-ին՝ Դամասկոսի ռադիոյի մենակատար (երգիչ, կիթառահար, խմբավար): 1978–83-ին՝ Ե. Սահառունու անվ. երգի-պարի անսամբլի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: Համամիութ. (1967, Մոսկվա, 2-րդ կարգի դիպլոմ), Հանրապետ. (1967, ոսկե մեդալ), Հայաստանի երիտասարդ. 1-ին (1968, արծաթե մեդալ) փառատոների, Կոմիտասի 100-ամյակին նվիրված մրցույթի (1969, ոսկե մեդալ) դափնեկիր:

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ, V դ-ում Հայաստանում ***Մեսրոպ Մաշտոցի*** հիմնադրած հայկ. դպրոցները. 1-ինը՝ մոտ 403-ին՝ ***դանիելյան նշանագրերը*** Հայաստան բերելուց հետո, իսկ գրերի գյուտից հետո՝ 405-ից, բացվել են բազմաթիվ վայրերում: Նրանցից մի քանիսը վերաճել են համալսարանների: XIX դ-ում բացված մի շարք հայկ. դպրոցներ նույնպես կոչվել են Մեսրոպյան:

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, Կ. Պոլսում և այլ վայրերում տարբեր ժամանակներում գործած կրթ-լուսավոր. կազմ-յուններ: Առաջինը հիմնադրել են Կ. Պոլսի կաթոլիկ հայրերը 1847-ին (գոյատևել է մինչև 1888-ը), որի խնամակալությամբ գործել է նույնանուն վարժարան: 1854-ին կազմվել է մեկ այլ ընկ.՝ գր. գործեր և պարբ-ներ տպագրելու համար (1855-ից լույս է ընծայել «*Ասպղիկ արեւելեան*»-ը): 1864–80-ին գործել է Կ. Պոլսի Ռումելի Հիսար (անվճար կրթել է աղքատ արհեստավորներին), 1869-ից՝ Յենի Գաբու թաղամասերի ընկ-ները, 1881-ից՝ Զմյուռնիայի Մ. ը.:

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ, հիմնադրվել է 1799-ին Զմյուռնիայում՝ միջնակարգ դպրոցի ծրագրով: Ունեցել է գիշերօթիկ բաժին: 1840–45-ին գործել է տպարան (10 անուն գիրք): Լույս է ընծայել «Թութակ Հայկազեան», «Երկասէր» մանկ. հանդեսները: Փակվել է 1922-ին՝ գաղթավայրի դատարկվելու պատճառով:

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԱՌԱՏԵՍԱԿ, վաղ անցյալում այսպես է կոչվել ***երկաթագիրը***՝ ենթադրելով, որ այն գրվել է ***Մեսրոպ Մաշտոցի*** ձեռքով: Օգտագործվել է գրության 2 տեսակ՝ բոլորձև և անկյունավոր:

ՄԵՍՈՒՄԵՆՅ Ավետիս Գևորգի (1905–1981), կոմպոզիտոր: 1946-ից՝ Փարիզում. ղեկավարել է «Սայաթ-Նովա» ազգագր. անսամբլը: Հեղինակ է վոկալ-գործիք. և վոկալ-կամեր. երկերի, բալետի, օպերաների («Անուշ» ևն), «Նաիրյան» ծրագր. 4 սիմֆոնիայի: 1962-ին «Մեսրոպյան լեզու» կանտատը (խոսք՝ Պ. Սևակի) և 1965-ին «Եղեռնական համանվագը» Բեյրութում արժանացել են 1-ին մրց-ների: Գրառել և դաշնակել է Սրարկիրի, Եղեսիայի, Զմշկածագի, Շապին-Գարահիսարի ժող. երգեր:

ՄԵՍՔԵՆԵ, **Մեսկանա**, ք. Սիրիայում՝ Եփրատի ափին՝ Հալեպի մուհաֆազում (Օսմ. կայսրության Հալեպի նահանգ-ում): 1915-ին Արմ. Հայաստանից տեղահանված հայերի հավաքակայաններից: Թուրքերը ոչնչացրել են Մ-ում կուտակված 3 հզ. հայ որբերի: Հալեպից Մ-ի և *Ռաս ուլ Այնի* ճանապարհներով անապատ քշված 200 հզ. հայերից փրկվել են 5–6 հզ-ը:

ՄԵՏԱ... (հուն.՝ meta – միջև, անց, հետո, միջով, միջոցով), բարդ բառերի սկզբնամաս. ցույց է տալիս. միջանկյալություն, հաջորդում, անցում մեկից մյուսին (օր.՝ ***մետագենեզ***): Տես նաև *Օրթո..., Պարա...*:

ՄԵՏԱԲԱՐՈՑԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, փիլ. հասկացություն, որը ներմուծել են նորպոզիտիվիստները: Նորմատիվային բարոյականությանը հակադիր տեսություն է: Ըստ Մ-յան՝ բարոյական դատողությունները հնարավոր չէ հիմնավորել գիտ. ճանապարհով, ինչպես նաև որևէ բարոյական պնդման և սկզբունքի նկատմամբ «չեզոք» բարոյականության փիլ-յուն ստեղծելու ձգտմամբ:

ՄԵՏԱԲԻՈԶ (< ***մետա***... և հուն.՝ bios – կյանք), միկրոօրգանիզմների փոխհարաբերության ձև, որի դեպքում օրգանիզմների մի տեսակի կենսագործունեության նյութերը կերի աղբյուր են մյուս տեսակի համար:

ՄԵՏԱԲՈԼԻԶՄ (հուն.՝ metabole – փոփոխություն, փոխակերպում), 1. տես ***Նյութափոխանակություն***: 2. Ավելի նեղ իմաստով՝ միջանկյալ փոխանակություն, այսինքն՝ բջջի ներսում որոշակի նյութերի փոխակերպումը նրանց ներմուծման պահից մինչև վերջնանյութերի առաջացումը (օր.՝ սպիտակուցների Մ., գլյուկոզի Մ., դեղապատրաստուկների Մ.):

ՄԵՏԱԲՈԼԻՏՆԵՐ, նյութափոխանակության միջանկյալ նյութերը կենդանի բջիջներում: Դրանցից շատերը կարգավորող ազդեցություն ունեն օրգանիզմում կենսաքիմ. և ֆիզիոլոգ. կենսընթացների վրա:

ՄԵՏԱԳԱԼԱԿՏԻԿԱ, ժամանակակից աստղագիտ. հետազոտ. մեթոդներին մատչելի *Տիեզերքի* մասը: Մ. պարունակում է մի քանի մլրդ գալակտիկաներ:

ՄԵՏԱԳԵՆԵԶ (< ***մետա***... և հուն.՝ genesis – ծագում), կենդանիների (օր.՝ աղեխորշավորներ) սերունդների հաջորդականության ձևերից, որի դեպքում սեռ. ճանապարհով բազմացող առանձնյակների սերնդին հերթափոխում են անսեռ ճանապարհով բազմացող առանձնյակների սերունդը:

ՄԵՏԱԼԵԶՈՒ, միջանկյալ լեզու, որի միջոցով նկարագրվում են մեկ այլ լեզվի (ձևայնացված) կառուցվածք., իմաստ. հատկանիշները: Կոչվում է առարկայական լեզու կամ լեզու-օբյեկտ: Տրամաբ-յան մեջ և մաթ-ում սովորաբար միջոց է ձևայնացված լեզուների տրամաբ. և մաթ. հաշվարկումների ուսումնասիրման համար:

ՄԵՏԱԼԻԴՆԵՐ, **մետաղական միացություններ**, մետաղների՝ միմյանց հետ (միջմետաղային միացություններ), ինչպես նաև անցումային մետաղների և որոշ առավել էլեկտրադրական տարրերի քիմ. միացությունները: Մետաղները կարող են մտնել Մ-ի բաղադրության մեջ տարրաչափ. հարաբերություններով՝ առաջացնելով դալթոնիդներ, կամ ոչ տարրաչափ.՝ առաջացնելով բերթոլիդներ: Շատ Մ. կիրառվում են որպես մագնիս. նյութեր, կիսահաղորդիչներ, գերհաղորդիչներ:

ՄԵՏԱԼՈՖՈՆ (լատ.՝ metallum – մետաղ և հուն.՝ phone – ձայն), **մետաղաձայն**, 1. ինքնահունչ հարված. երաժշտ. գործիքներ (զանգակներ, վիբրաֆոն, գոնգ ևն)՝ կազմված հաջորդաբար դասավորված մետաղե ձողիկներից: Ձայնարտաբերումը՝ մուրճիկներով, փայտիկներով, հատուկ հարվածիչներով (լեզվակ ևն): 2. ***Քսիլոֆոնի*** նման մետաղե երաժշտ. գործիքներ:

ՄԵՏԱԿԱՅՈՒՆ ՎԻՃԱԿ, **միջակայուն վիճակ** (ֆիզ.), համակարգի անկայուն հավասարակշռության վիճակ, որից այն կարող է անցնել ավելի կայուն վիճակի՝ արտաքին գործոնների ազդեցությամբ կամ ինքնակամ (վերջին դեպքում անցման հավանականությունը շատ ավելի փոքր է): Թերմոդինամիկայում Մ. վ-ի օրինակ է գերտաքացած կամ գերսառած հեղուկը: Քվանտ. մեխանիկայում Մ. վ. է ատոմների, միջուկների կամ ատոմ. մոլ-ների գրգռված վիճակը, որում նրանք կարող են գոյատևել երկար ժամանակ:

ՄԵՏԱԿԵՆՏՐՈՆ, այն հետագծի կորության ակնթարթ. կենտրոնը, որով տեղաշարժվում է նավի բեռնված ծավալի ծանրության կենտրոնը՝ հորիզոն. առանցքի նկատմամբ նավի թեքվելու դեպքում: Մ-ի և նավի ծանրության կենտրոնի միջև եղած հեռ-յունը կոչվում է մետակենտրոն. բարձր-յուն, որը նավի նախն. կայունության չափն է և ընորոշում է վերականգնող. մոմենտները՝ թեքման փոքր անկյունների դեպքում:

ՄԵՏԱԿՐԻԼԱԹԹՈՒ, α-**մետակրիլաթթու**՝ $CH_2=C(CH_3)COOH$, չհագեցած միահիմն կարբոնաթթու: Սուր հոտով անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 162°C: Կիրառվում է կարբօքսիլատային կաուչուկների, անբեկոր ապակու (տրիպլեքս), սոսինձների արտադր-յան մեջ: Մեծ կիրառ. նշանակություն ունեն Մ-ի էսթերները, օր.՝ ***մետակրիլատները***:

ՄԵՏԱԿՐԻԼԱՄԻԴ, $CH_2=C(CH_3)C(O)NH_2$, անգույն, ջրում լուծելի բյուրեղներ են, $t_{եռ.}$՝ 110–111°C: Պոլիմետակրիլամիդի և ակրիլային համապոլիմերների հումք է (մեթիլմետակրիլատի հետ համապոլիմերի հիմքով ստանում են ջերմակայուն օրգ. ապակի): Թունավոր է:

ՄԵՏԱԿՐԻԼԱՏՆԵՐ, α-***մետակրիլաթթվի*** էսթերները կամ աղերը: Էսթերներն անգույն հեղուկներ են, աղերը՝ բյուրեղ.

նյութեր: Արդ. նշանակություն ունեն հիմնականում էսթերները (մեթիլ–, էթիլ– և բութիլմետակրիլատները), որոնցից սինթեզում են պոլիմերներ, որոնք կիրառվում են անբեկոր ապակիների, սոսինձների, լաքերի, շերտավոր պլաստիկների արտադր–յան, ինչպես նաև վիրաբուժության և ատամնաբուժության (պրոթեզներ պատրաստելու համար) մեջ:

ՄԵՏԱԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գիտ–յուն, որն ուսումնասիրում է մետաղների և համաձուլվածքների բաղադրության, կառուցվածքի և հատկությունների միջև եղած կապը, ինչպես նաև տարբեր ներգործությունների (քիմ., ջերմ., մեխ.) հետևանքով առաջացող փոփոխությունների օրինաչափությունները:

ՄԵՏԱԼԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գիտ–յան ու տեխնիկայի բնագավառ և արդ–յան ճյուղ. ներառում են հանքաքարից կամ այլ նյութերից մետաղների ստացման, մետաղ. համաձուլվածքների քիմ. կազմի, կառուցվածքի ու հատկությունների փոփոխման, մետաղին որոշակի ձև տալու գործընթացները: Կիրառվում են նաև ոչ մետաղ. նյութերի, այդ թվում՝ կիսահաղորդիչների արտադր–յան մեջ:

ՄԵՏԱԼԱԴՐԱՄ, թողարկման պատասխանատու անձի (էմիտենտի) երաշխավորած, չափորոշված ձևաչափով, անվանն. արժեքով, զանգվածով ու որակով մետաղե դրամի տեսակ: Ժամանակակից Մ–ները սովորաբար դրամանիշներ են, այսինքն՝ նրանց սեփ. արժեքն զգալիորեն ցածր է անվանականից. ունեն դիմերես ու շրջերես և կողեզր:

ՄԵՏԱԼԱԹԵՐՄԻԱ (< *մետաղ* և հուն.՝ therme – ջերմություն), ***մետաղագործության*** բնագավառ, որի հիմքում ընկած են օքսիդներից և այլ միացություններից (հալոգենիդներ ևն) ավելի ակտիվ մետաղների միջոցով մետաղների վերականգնման շարժընթացները, որոնց արդյունքում անջատվում է մեծ քանակությամբ ջերմություն: Որպես մետաղ. վերականգնիչ՝ լայնորեն կիրառվում է ալյումինը (ալյումինաթերմիա), իսկ ոչ մետաղներից՝ սիլիցիումը (սիլիկաթերմիա):

ՄԵՏԱԼԱԿԱՆ ԲՅՈՒՐԵՂՆԵՐ, բյուրեղներ, որոնցում ատոմները միավորված են մետաղ. քիմ. կապերով: Հարևան ատոմների արժեք. օրբիտալները վերածածկվում են, և առաջանում են ընդհանրացված ազատ էլեկտրոններ, որոնք տեղայնացվում են բյուրեղացանցի հանգույցների դրական իոնների միջև, էլեկտրաստատիկ. ուժերով դրանք կապում միմյանց:

ՄԵՏԱԼԱԿԱՆ ԿԱՊ, իրականանում է մետաղների դրական լիցքավորված բյուրեղացանցի հետ էլեկտրոն. գազի փոխազդեցությամբ: Բնույթով մոտ է կովալենտ կապին: Բնորոշ է մետաղներին ու համաձուլվածքներին, միջմետաղ. միացություններին, պահպանվում է ոչ միայն պինդ բյուրեղներում, այլև հալույթներում ու ամորֆ վիճակում:

ՄԵՏԱԼԱԿՈՄՊԼԵՔՍԱՅԻՆ ԿԱՏԱԼԻԶ, քիմ. ռեակցիայի արագացումը ռեագենտների ակտիվացմամբ, դրանց և հիմնականում անցումային մետաղների կոմպլեքս. միացությունների (մետաղակոմպլեքս. կատալիզորդներ) փոխազդեցության արդյունքում: Համասեռ կատալիզի կարևորագույն տեսակներից է:

ՄԵՏԱԼԱՅԻՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ, մեկ կամ մի քանի մետաղ պարունակող ***հանքանյութերի*** բնական կուտակումներ: Տարբերում են սև (երկաթ, մանգան, քրոմ), հազվագյուտ (տիտան, վանադիում, նիկել, կոբալտ, մոլիբդեն, վոլֆրամ, անագ, բիսմութ, մկնդեղ, ծարիր, սնդիկ), գունավոր (պղինձ, կապար, ցինկ, ալյումին, մագնեզիում), ազնիվ (արծաթ, ոսկի, պլատին, պալադիում, օսմիում, իրիդիում, ռոդիում, ռութենիում), ճառագայթաակտիվ (ուրան, թորիում, ռադիում), ցրված և հազվագյուտ հողային մետաղների Մ. օ. հ.: ՀՀ և ԼՂՀ տարածքը հարուստ է պղնձի, ալյումինի, երկաթի, մոլիբդենի, բազմամետաղների և այլ հանածոներով:

ՄԵՏԱԼԱՊԱՏՈՒՄ (տեխ.), շինվածքի մակերևույթի վրա մետաղի կամ համաձուլվածքի շերտի գոյացում՝ այդ շինվածքին տարբեր ֆիզ., քիմ., մեխ. և այլ հատկություններ հաղորդելու՝ կոռոզիայից պաշտպանելու, հպում. էլեկտրահաղորդականությունը բարձրացնելու, գեղազարդիչ և այլ նպատակներով: Հիմն. տեսակներն են՝ էլեկտրոլիտ. (այդ թվում՝ պլազմ.), քիմ., գազաբոց. (փոշիացում), վակուում., պայթյուն., լազեր., պլազմ., դիֆուզ. և այլ Մ–ներ: Մ–ման համար կիրառված մետաղների (օր.՝ Al, Cu, Ni, Cd, Ag, Au) և համաձուլվածքների (բրոնզ, արույր) տեսակից կախված՝ շարժընթացն անվանում են, համապատասխանաբար, ալյումինավորում, պղնձավորում, նիկելավորում ևն:

ՄԵՏԱԼԱՊԼԱՍՏՆԵՐ, միակողմ կամ երկկողմ պոլիմեր. ծածկույթով թերթավոր մետաղանյութ: Օգտագործում են ավտոմեքենաների թափքերի, կենցաղ. տեխնիկայի իրանների, սննդամթերքի և ագրեսիվ նյութերի պահպանման տարայի արտադր–յան համար, նաև տնաշին. և արդ. շին–յան, վագոնաշինության մեջ՝ որպես երեսամշակման նյութ:

ՄԵՏԱԼԱՊՈԼԻՄԵՐՆԵՐ, ջերմապլաստների, սինթետիկ խեժերի կամ կաուչուկների հիմքով նյութեր, որոնք պարունակում են մետաղի կամ համաձուլվածքի լցանյութեր (փոշիների, թելքերի, ժապավենների տեսքով): Օգտագործում են որպես էլեկտրահաղորդիչ սոսինձների, հերմետիկների և լաքաներկերի ծածկերի հիմք՝ առանցքակալների ներդիրներ, մագնիս. ժապավեններ, էլեկտրամագնիս. դաշտերից և իոնացնող ճառագայթման ազդեցությունից պաշտպանող էկրաններ պատրաստելու համար, նաև մետաղների նորոգման ու վերականգնման համար:

ՄԵՏԱԼԱՊՐՈՏԵԻԴՆԵՐ, սպիտակուցների կոմպլեքսները ծանր մետաղների (Fe, Zn, Cu, Mn ևն) հետ: Կատարում են շնչառ. գունանյութերի, մետաղներն օրգանիզմ փոխադրողների, ֆերմենտների (մետաղաֆերմենտներ) դեր:

ՄԵՏԱԼԱՕՊՏԻԿԱ, օպտիկայի բաժին. ուսումնասիրում է մետաղների փոխազդեցությունն էլեկտրամագնիս. ալիքների հետ՝ ալիքների երկ–յան լայն տիրույթում՝ ներառյալ օպտիկ. ընդգրկույթը:

ՄԵՏԱԼԱՖԻԶԻԿԱ, ֆիզիկայի բաժին. ուսումնասիրում է մետաղների և համաձուլվածքների կառուցվածքն ու հատկությունները, նաև թերմոդինամիկ. հավասարակշռության պայմանները և նրանցում տարբեր շարժընթացների (դիֆուզիա, ֆազ. փոխակերպումներ ևն) բնույթը, ինչպես նաև մետաղների ու համաձուլվածքների ամրությունը, պլաստիկությունը, էլեկտրահաղորդականությունը և այլ հատկություններ:

ՄԵՏԱՂԻ ԱՐԱՏՆԵՐ, նախատեսված որակից մետաղի քիմ. բաղադրության, կառուցվածքի, հոծության, մակերևույթի վիճակի, մեխ. և այլ հատկությունների շեղումը: Առաջանում են մետաղի ստացման կամ մշակման տեխ. անկատարության կամ տեխնոլոգ. խախտումների հետևանքով: Մ. ա–ից են ոչ մետաղ. ներխառնուկները, կծկման փչուկները, խոռոչները ևն, գլոցումից, կոումից, դրոշմումից առաջացած արատները՝ շերտավորումը, մազաճեղքերը, դարձածալքերը, ջերմամշակումից՝ ճաքերը, օքսիդացումը, ածխազրկումը, եռակցման և զոդման շարժընթացից՝ ճաքերը, թերաեռքը, կոռոզիայի հետքերը ևն:

ՄԵՏԱՂՀԱԼՈԳԵՆԱՅԻՆ ԼԱՄՊ, բարձր և գերբարձր ճնշմամբ լույսի պարպումային աղբյուր, որտեղ օպտիկ. ճառագայթումն առաջանում է իներտ գազի (սովորաբար՝ Ar) և մետաղների (Na, Tl, In, Sc, Dy ևն) հալոգենիդների գոլորշիների խառնուրդում էլ. պարպման արդյունքում: Կիրառվում է տեղային և ընդհ. լուսավորման համար, ինչպես նաև հատուկ նշանակության լուսավորող ապարատներում: Ընդհ. նշանակության Մ. լ–ի հիմն. առավելությունը բարձրլուս. (մինչև 100 *լմ/Վտ* և ավելի) հատույցն է և երկարաժամկետ կիրառությունը (մինչև 20 հզ. *ժ*), մոտ է արև. ճառագայթման սպեկտրին:

ՄԵՏԱՂՆԵՐ, նյութեր, որոնք սովոր. պայմաններում ունեն բարձր էլեկտրահաղորդականություն (10^6–10^4 *Օմ*$^{-1}$*սմ*$^{-1}$, փոքրանում է ջերմաստիճանի աճման հետ) ու ջերմահաղորդականություն, պլաստիկություն, լուս. ալիքները լավ անդրադարձելու և այլ հատկություններ, որոնք պայմանավորված են ատոմների միջուկներին թույլ կապված մեծաթիվ (1 *սմ*^{3}-ում 10^{22}–10^{23}) շարժուն էլեկտրոններով: Մ. կարելի է ներկայացնել էլեկտրոն. գազի մեջ ընկղմված իոնների բյուրեղ. կմախքի տեսքով, որը հավասարակշռում է իոններով էլեկտրաստատիկ. վանումը և դրանք կապում է իրար (մետաղ. կապ)՝ որպես պինդ մարմին: Մ–ի բազմաթիվ հատկություններ հնարավոր է բացատրել՝ համարելով, որ հաղորդականության էլեկտրոնները ֆերմիոնների այլասերված իդեալ. գազ են, իսկ իոնները միայն տեղեծում են պոտենցիալ հոր, որի մեջ շարժվում են էլեկտրոնները (Դրուդե–Լորենց–Զոմերֆելդի մոդել): Մ–ի հատկություններն ավելի ամբողջ. բացատրում է պինդ մարմնի գոտիական տեսությունը: Մետաղ. հատկություններով օժտված են մոտ 90 քիմ. տարրեր և բազմաթիվ համաձուլվածքներ: Մ–ի քիմ հատկությունները պայմանավորված են ատոմների միջուկների հետ վալենտ. էլեկտրոնների թույլ կապով: Մ. դյուրությամբ առաջացնում են դրական իոններ, ցուցաբերում են օքսիդացման դրական աստիճան, առաջացնում են հիմն. օքսիդները և հիդրօքսիդները: Տեխնիկայում ընդունված է Մ–ի սև (Fe և դրա հիմքով համաձուլվածքներ) և գունավոր (մնացած բոլորը) բաժանումը: Մ. վիթխարի դեր են կատարում, հիմնականում՝ որպես կառուցվածք. և էլեկտրատեխ. նյութեր:

ՄԵՏԱՂՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ածխածնի ատոմին անմիջականորեն միացած մետաղի ատոմ պարունակող օրգ. միացություններ: Մ.

մ–ի հատկությունները պայմանավորված են մոլ–ում մետաղ–ածխածին (M–C) կապի բնույթով, որն իր հերթին կախված է հիմն. մետաղի և նրան միացած օրգ. ռադիկալների բնույթից ու քանակից, օր.՝ ֆենիլլիթիում՝ C_6H_5Li, մեթիլմագնեզիումի բրոմիդ՝ CH_3MgBr, քառաէթիլկապար՝ $(C_2H_5)_4Pb$: Մ. մ. ռեագենտներ են օրգ. սինթեզում, պոլիմերման կատալիզորդներ՝ պլաստմասսաների և կաուչուկների արտադր–յան մեջ, ննկասպաններ, բակտերիասպաններ ևն: Տես նաև ***Տարրօրգանական միացություններ***:

ՄԵՏԱՄԵՐԻԱ (< *մետրա*... և հուն.՝ meros – մաս, հատված), **մարմնահատվածավորություն** (սեգմենտացիա), բազմաթիվ երկկողմանի համաչափ կենդանիների մարմնի անդամատվածությունը նման մասերի՝ մետամերների, որոնք դասավորված են երկայն. առանցքի կամ համաչափության հարթության երկայնքով: Կենդանիների մարմնի առավել լրիվ Մ., որ ներառում է նաև որովայնախոռոչի օրգանները, կոչվում է հատվածավորում (օր.՝ օղակավոր որդերինը):

ՄԵՏԱՄՈՐՖԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐ, **փոխակերպային ապարներ**, առաջանում են նստվածք. կամ հրային ապարների ***մետամորֆիզմի*** արդյունքում՝ նրանց միներալ. և քիմ. կազմի, կառուցվածքի փոփոխմամբ (օր.՝ գնեյսներ, բյուրեղ. թերթաքարեր, քվարցիտներ, ամֆիբոլներ, մարմարներ) ևն:

ՄԵՏԱՄՈՐՖԻԶՄ, ապարների կառուցվածքի, միներալ. ու քիմ. կազմի էական փոփոխություններ երկրակեղևում և Երկրի միջնապատյանում՝ ջերմության, ճնշման և խորք. ֆլյուիդների (ցնդող բաղադրիչներ) ներգործությամբ: Եզրույթն առաջարկել է անգլիացի երկրաբան Չ. Լայելը 1883–ին:

ՄԵՏԱՄՈՐՖՈԶ (հուն.՝ metamorphosis – կերպարանափոխություն), 1. բույսերի հիմն. օրգանների (արմատ, ցողունն, տերև, ծաղիկ) տեսակափոխությունը՝ ֆունկցիայի փոփոխության հետ կապված: 2. Կենդանիների Մ. հետսաղմն. զարգացման շրջանում օրգանիզմի կազմության խորը կերպարանափոխությունն է (օր.՝ շերեփուկի վերածումը գորտի, կամ միջատի թրթուրինը՝ հասուն անհատի՝ իմագոյի):

ՄԵՏԱՆԵՖՐՈՍ (< *մետրա*... և հուն.՝ nephros – երիկամ), երկրորդ. կամ կոնքային երիկամ. սողունների, թռչունների, կաթնասունների և մարդու արտաթորության զույգ օրգան: Գոյանում է մեզոնեֆրոսից՝ սաղմն. զարգացման կենսընթացում:

ՄԵՏԱՍԵՔՎՈՅԱ (Metasequoia), ճահճանոճազգիների ընտանիքի ասեղնատերև ծառերի ցեղ: Միակ մնացորդ. տեսակն է, որը կավճի դարաշրջանում հս. կիսագնդում զբաղեցրել է ընդարձակ տարածքներ: Պահպանվել է միայն Կենտր. Չինաստանում: Լայնորեն աճեցնում են զբոսայգիներում (Միջին Ասիա, Ղրիմ, Կովկաս ևն): Մյուս տեսակները հայտնի են որպես միայն բրածոներ:

ՄԵՏԱՍԻՄՊԱԹԻԿ ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ (< *մետրա*... և հուն.՝ simpatis – ազդեցության հանդեպ զգայուն, ընկալունակ), վեգետատիվ նյարդ. համակարգի մաս: Մ. ն. հ–ի նյարդ. հանգույցներն ու հյուսակները տեղակայված են ներքին սնամեջ օրգանների պատերում, որոնք օժտված են սեփ. շարժող. ավտոմատիզմով (ստամոքսաղիք. համակարգ, սիրտ ևն): Ապահովում է ներքին օրգանների նյարդավորման բազային մակարդակը: Շարժող. ակտիվության հետ մեկտեղ հսկում և համաձայնեցնում է հյութազատությունը, արյան տեղային հոսքն ու իմունոռեակցիաները և այլ ֆունկցիաներ:

ՄԵՏԱՍՏԱԶ (հուն.՝ metástasis – տեղափոխություն, անցում, տեղաշարժ), երկրորդ. ախտաբան. օջախ, որն առաջանում է հիվանդության առաջնային օջախից արյան կամ ավշի հոսքով հիվանդածին մասնիկների (ուռուցք. բջիջներ, միկրոօրգանիզմներ) տարածման հետևանքով: Ժամանակակից ըմբռնումով՝ Մ. սովորաբար բնորոշվում է չարորակ ուռուցքի բջիջների տարածմամբ (դիսեմինացում):

ՄԵՏԱՍՏԱԶԻՈ (Metastasio, Տրապասսի) Պիետրո (1698–1782), իտալացի բանաստեղծ, դրամատուրգ–լիբրետիստ: Հեղինակ է «Բանաստեղծություններ»–ի, հովվերգությունների, կանտատների, փոքրիկ կանցոնետների («Ազատություն», 1733, «Հրաժեշտ», 1746, ժող–ներ) և այլ գործերի: Նրա լիբրետոների հիման վրա ստեղծվել են օպերաներ: Հայ. հրատարակվել է «Թեմիստոկլես» (1886) գործը:

ՄԵՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ, տեսություն. ուսումնասիրում է մեկ այլ (առարկայական կամ օբյեկտային) տեսության լեզուն, կառուցվածքը և այլ հատկություններ: Մ–յան լեզուն անվանում են մետալեզու, օբյեկտ. տեսության լեզուն՝ օբյեկտ. լեզու: Հասկացությունը ներմուծել է Պ. Ժիլբերտը 1904–ին՝ կապված նրա՝ ապացույցների տեսության միջոցներով մաթ–ի հիմնավորման ծրագրի հետ:

ՄԵՏԱՏՐԱՄԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ժամանակակից տրամաբ–յան բնագավառ. ուսումնասիրում է տրամաբ. տեսությունների կառուցվածքն ու հատկությունները: Մ–յան մեջ առանձնացվում է ձևաբանությունը, որտեղ քննարկվում են տրամաբ. հաշիվների կառուցման օրենքները, և իմաստաբանությունը, որը վերաբերում է այդ հաշիվների մեկնաբանության խնդիրներին:

ՄԵՏԱՔՈՒ, բնական տեքստիլ թել՝ ***բոժոժի*** հյուսման ժամանակ շերամորդի մետաքսագեղձերից անջատվող նյութը: Ունի բարձր մեխ. հատկություններ. խզման լարումը 40 *կգ/մմ*^{2} կարգի է, խզման երկարացումը՝ 14–18 %: Տես նաև ***Շերամապահություն***:

ՄԵՏԱՔՍԱԾԱՆ (Albizziad), **մետաքսակացիա**, բակլազգիների (թիթեռնածաղկավորներ) ընտանիքի ծառերի և թփերի ցեղ: Հայտնի է մոտ 125 տեսակ՝ արևադարձ., մերձարևադարձ. երկրներում (Արլ. կիսագնդում): Դեղազարդիչ է: Որոշ տեսակներից ստանում են արժեքավոր փայտանյութ և հարուստ դաբաղանյութերով կեղև:

ՄԵՏԱՔՍԵ (Պողոսյան Մետաքսե Սերոբի, 1928–2014), բանաստեղծուհի: Հեղինակ է «Կնոջ սիրտ» (1960), «Զգույշ, սիրտ է» (1974), «Հազար ու մի սեր» (1981), «Արցունքները չեն ծերանում» (1989), «Սերս ծոցիս մեջ մնաց» (2009), «Մենք ենք ու մենք» (2011) և այլ բանաստեղծությունների ժող–ների, «Շամիրամ» (1995), «Ամենափրկիչ» (1999) և այլ պոեմների, նաև հուշագրությունների, հոդվածների: Թարգմանել է Բ. Ա. Ախմադուլինայի, Մ. Դեսանկայի, Ս. Մաննայի և ուր. գործերից:

ՀԳՄ «Գրական վաստակի համար» (2007), ՀՀ «Մովսես Խորենացի» (2008) մեդալներ, ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» շքանշան (2011):

«ՄԵՏԱՔՍԻ ՃԱՆԱՊԱՐՀ», Չինաստանն Առաջավոր Ասիայի, ապա՝ Եվրոպայի հետ կապող առևտրակարավան. մայրուղու անվանումը: Երկ.՝ ավելի քան 7 հզ. *կմ*: Գործել է մ. թ. ա. II դ.–մ. թ. XVI դ.: Հիմնականում փոխադրվել է չին. մետաքս (այստեղից էլ՝ անվանումը): «Մ. ճ.»–ի մի հատվածն անցել է Հայաստանով: Մեր օրերում նոր «Մ. ճ.»–ի կառուցման նախագծեր կան:

ՄԵՏԱՖԱԶ, բջջի բաժանման փուլ, որը հաջորդում է ***պրոֆազին***: Մ–ում ավարտվում է իլիկի բաժանման ձևավորումը, իսկ քրոմոսոմների զույգը մտնում է բջիջների հասարակած. հարթության մեջ: Տես նաև ***Միտոզ***:

ՄԵՏԱՖԻԶԻԿԱ (հուն.՝ metà tà physikà – ֆիզիկայից հետո), 1. փիլ. ուսմունք կեցության գերզգայական (փորձին անհասանելի) սկզբունքների մասին: ***Արիստոտելի*** գործերը դասակարգելիս Անդրոնիկոս Ռոդոսացին նրա «առաջին փիլիսոփայությանը» վերաբերող գործերը անվանել է «Մ.»՝ նկատի ունենալով այն, ինչը կարող է ճանաչվել բնությունից հետո: Հայ միջնադար. փիլ–ները Դավիթ Անհաղթի միջոցով ժառանգել են այս ավանդույթը: 2. Դիալեկտիկային հակադիր մեթոդ: «Մ.» տերմինը հակադիալեկտիկայի իմաստով գործածել է Գ. ***Հեգելը***: «Մ.» բացառում է հակասությունները, աշխարհի որակ. բազմազանությունը, որի վրա հիմնված է զարգացման մետաֆիզ. ըմբռնումը՝ որպես քանակ. փոփոխություններով կատարվող սահուն էվոլյուցիայի:

ՄԵՏԵՄՓՍԻԽՈՋ (հուն.՝ metempsychosis – հոգիների վերաբնակեցում), կրոնափիլ. պատկերացում, ըստ որի՝ մահից հետո հոգին վերաբնակվում է որևէ բույսի, կենդանու, մարդու, աստվածության մարմնում: Բնորոշ է հնդ. կրոններին, ինչպես նաև ***օրֆիզիզմին*** և ***պյութագորասականությանը*** (Հին Հունաստան):

ՄԵՏԵՐԼԻՆԿ (Maeterlinck) Մորիս (1862–1949), բելգիացի ֆրանսիագիր գրող: 1896–ից՝ Ֆրանսիայում: Մ–ի սիմվոլիստ. պոեզիան բողոք էր նատուրալիզմի վայրէջքի դեմ: Հեղինակ է «Իշխանուհի Մալեինը» (1889, հայ.՝ 1972), «Քույր Բեատրիսը» (1900), «Միննա Վաննան» (1902, հայ. հրտ. և բեմ.՝ 1902), «Սուրբ Անտոնիոսի հրաշքը» (1903, հայ. հրտ. և բեմ.՝ 1922), «Սթիլմոնտի քաղաքապետը» (1919, հայ.՝ 1922) և այլ սիմվոլիստ. պիեսների, «Կապույտ թռչունն» (1908, հայ.՝ «Մահը և կապույտ թռչունը», 1914) հեքիաթ–պիեսի, որը լի է բնության ուժերի, սովի, պատերազմի նկատմամբ մարդու հաղթանակի հավատով, նաև բանաստեղծությունների, գեղագիտ. ու փիլ. էսսեների և այլ գործերի:

Նոբելյան մրց. (1911):

ՄԵՏԻՄ, տես ***Խառնածին***:

ՄԵՏՀԵՄՈԳԼՈԲԻՆ, հեմոգլոբինի ձև, որի մեջ հեմի երկաթն օքսիդացած է մինչև Fe (III), ունակ չէ թթվածին փոխադրելու: Օրգանիզմում Մ–ի առաջացումը (օր.՝ նիտրատներով, անիլինով թունավորումների ժամանակ) հանգեցնում է թթվածնաքաղցի:

ՄԵՏՆԵՐ (Medtner) Նիկոլայ Կառլովիչ (1879/80–1951), գերմանացի կոմպոզիտոր, դաշնակահար: Դաշնամուր. հեքիաթի ժանրի հիմնադիրը: XX դ–ի սկզբի

դաշնամուր. արվ–ի վարպետներից: Հեղինակ է սոնատի, 3 կոնցերտի՝ դաշնամուրի և նվագախմբի համար, նաև ռոմանսների, երգերի ևն:

ՄԵՏՐ (ֆրանս.՝ mètre, < հուն. métron – չափ), 1. երկ–յան միավոր՝ միավորների մետր. և ՄՄՀ–ում: Երկ–յան հիմն. միավորը հավասար է 100 *ամ* կամ 0,001 *կմ*: Համաձայն Չափերի և կշիռների գլխ. համաժողովի (1983) ընդունված որոշման՝ 1 «*մ*» այն երկ–յունն է, որը լույսն անցնում է վակուումում՝ *վ*–ի 1/299792458 մասի ընթացքում: Պայման. նշանակումը՝ *մ*: Ընդունված առաջին սահմանման (1791, Ֆրանսիա) համաձայն՝ հավասար է եղել Փարիզի միջօրեականի 1/4 երկ–յան 1×10^{-7} մասին: Մինչև 1960–ը միջազգ. չափանմուշ է ծառայել պլատինի (90 %) և իրիդիումի (10 %) համաձուլվածքից պատրաստված X–աձև լայն հատույթով խաչազծված չորսվակը (պահպանվում է Սևրի Չափերի և կշիռների միջազգ. բյուրոյում): 1960–83–ին Մ. սահմանվել է հավասար վակուումում ^{86}Kr ատոմի $2p^{10}$ և $5d^5$ մակարդակների միջև անցմանը համապատասխանող ճառագայթման 1 650 763,73 ալիքի երկ–յանը:

2. (Երաժշտ.) **չափ**, երաժշտության *ռիթմի* համակարգ, որը հիմնված է ռիթմ. կառուցվածքի մեծությունը որոշող որոշակի չափի պահպանման վրա: Լինում են պարզ (երկմաս և եռամաս), բարդ (միանման պարզ բաղկացուցիչներից), խառը (տարբեր բաղկացուցիչներից), պարբերաբար և ոչ պարբերաբար հաջորդափոխվող ու անկանոն Մ–եր: Հայկ. ժող. երգերում և պարերում հանդիպում են տարբեր կառուցվածքների՝ հնգամաս (2–3, 3–2), յոթամաս (2–2–3, 2–3–2, 3–2–2), ութամաս (3–3–2) և այլ խառը Մ–եր:

ՄԵՏՐԱԿԱՆ ԱԼԻՔՆԵՐ, 10^{-4}*մ*|(3–30) × 10^7 *Հց* հաճախության) ռադիոալիքներ: Օգտագործվում են տիեզ. օբյեկտների կապի համար, վերերկրյա ռադիոկապի, ռադիոտեղորոշման, հեռուստատեսության (պատկերի հաղորդման համար) մեջ:

ՄԵՏՐԻԿԱ (երաժշտ.), 1. *մետրի* որոշակի դրսևորումների ամբողջությունը երաժշտ. երկում: 2. Ուսմունք երաժշտ. *մետրի* մասին:

ՄԵՏՐԻՏ, տես *Արգանդի բորբոքում*:

«ՄԵՏՐՈ», թատրոն, հիմնադրվել է 1992–ին Երևանում (1992–94 և 2004–07–ին գեղ. ղեկ.՝ Վիգեն *Ստեփանյան*, 1994–2004–ին՝ Նիկոլայ *Ծատուրյան*): Բեմադրվել են Ա. Աղասյանի «Ուիլլի, Թիթի, Ձիկ և երեքն էլ աղջիկ», Մանիեի «Փարիզը վտանգավոր քաղաք է», «Հետադարձ հայացք» (ըստ Պ. Սևակի), Պանյոլի «Տոպազ», Ռ. Կալինովսկու «Հրեշը լուսնի վրա», Վ. Սարոյանի «Քարանձավի բնակիչները», Ա. Այվազյանի «Արալեզ» և այլ պիեսներ: Թատրոնին կից գործում է «Մետրո» մանկ. ստուդիան (1992–ից):

ՄԵՏՐՈՊՈԼԻՏ (հուն.՝ mētropolitēs), եպիսկոպոս. տիտղոսներից (պապ, կաթողիկոս, արք. ևն տիտղոսների թվում) պատմականորեն առաջինը քրիստ. եկեղեցիներում: Խոշոր թեմի առաջնորդ է, ենթակա է պատրիարքին:

ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ, **մետրո** (ֆրանս.՝ métropolitain – բառացի՝ մայրաքաղաք. երկաթգիծ), ավանդ. իմաստով՝ քաղաք. երկաթգիծ, որով երթևեկում են երթուղ. գնացքներ, լայն առումով՝ քաղաք. արտափողոց. երկաթուղի՝ ուղևորների զանգված. փոխադրումների համար: Մ–ի գծերն անցնում են ստորգետնյա թունելներով, ուղևոցներով կամ փողոցի հատուկ առանձնացված տեղամասերով: Առավել տարածված են Մ–ի ստորգետնյա գծերը: Որոշ ք–ներում (Փարիզ, Լոս Անջելես ևն), սովոր. գծերից բացի, շահագործվում են արվարձանները քաղաքի կենտր. շրջաններին կապող արագընթաց Մ–ի գծեր: Առաջին Մ. կառուցվել է Լոնդոնում 1863–ին, հետագայում Մ–ներ են կառուցվել Նյու Յորքում (1868), Բուդապեշտում (1896), Վիեննայում (1898) և Փարիզում (1900): Կայարանների և երթուղիների թվով աշխարհում խոշորագույնը Նյու Յորքի Մ. է (469 կայարան, 34 երթուղի), երկ–յամբ՝ Շանհայինը (588 *կմ*) և Պեկինինը (573,6 *կմ*): Երևանի Մ. գործարկվել է 1981–ին և ընդլայնվել է մինչև 1996–ը: Ունի 10 կայարան, ընդհ. երկ.՝ 12,1 *կմ*:

«ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ ՕՊԵՐԱ» («Metropolitan Opera»), օպեր. թատրոն ԱՄՆ–ում, համաշխ. երաժշտարվ–ի կենտրոններից: Բացվել է 1883–ին Նյու Յորքում (1966–ից՝ «Լինքոլն» կենտրոնի շենքում): Ներկայացումները՝ իտալ., գերմ., 1910–ից՝ անգլ., այժմ՝ բնագրի լեզվով: Երկացանկում՝ դաս. գործեր:

«Մ. օ.»–ում հանդես են եկել նշանավոր, նաև հայ երաժիշտներ (Պաոլո Անանյան, Սյուզան Սիմոնե, Կարպիս Բոյաջյան, Շաքե Վարթենիսյան, Հասմիկ Պապյան, Արման *Թոքաթյան*, Լիլի *Չուգասզյան*, Լուսին *Ամարա*, Արա *Բերբերյան* և ուր.):

ՄԵՏՑԻԳ (Maetzig) Կուրտ (1911–2012), գերմանացի կինոռեժ.: Նկարահանել է «Էռնստ Թելման՝ իր դասակարգի որդին» (1954), «Յանուսի գլուխը» (1972), «Տղամարդն ընդդեմ տղամարդու» (1976) և այլ ֆիլմեր:

«ՄԵՐ ԿԵԱՆՔԸ», գր., հաս. հանդես (1910–12, Աստրախան): Խմբ–հրտ.՝ Արել Ապրեսյան:

«ՄԵՐ ՁԱՅՆԸ», քաղ., հաս., գր. շաբաթաթերթ (1907–09, Նոր Նախիջևան): Խմբ–հրտ.՝ Հովհաննես Մալխասյան:

«ՄԵՐ ՈՒՂԻՆ», ազգ., հաս., գր. երկօրյա թերթ (1931–32, Փարիզ): *«Երևան»* (1925–30) թերթի շարունակությունն է: Խմբագրակազմ (Գուրգեն Թահմազյան, Զապել Եսայան և ուր.):

ՄԵՐԱՆԳՈՒԼՅԱՆ Արամ Հարությունի (1902–1967), կոմպոզիտոր, դիրիժոր, թառահար, մանկավարժ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1959): 1927–67–ին՝ հայկ. ռադիոյի և հեռուստատեսության (1957–ից) ժող. գործիքների անսամբլի հիմնադիր–ղեկ. (1967–ից՝ Մ–ի անվ.): Հեղինակ է վոկալ և գործիք. երկերի, ժող. երգերի ու պարեղանակների մշակումների, «Սայթ–Նովա» (1960) հեռուստաֆիլմի ժող. երգերի, «Թառի ուսուցման դպրոց» (1983) ձեռնարկի:

ԽՍՀՄ «Պատվո նշան» (2) շքանշան:

ՄԵՐԳԵԼ, նստվածք. ապար, կազմված է կալցիտից կամ դոլոմիտից և կավ. միներալներից: Սովորաբար Մ. են համարում այն ապարը, որը պարունակում է 30–90 % $CaCO_3$ կամ $MgCO_3$ և, համապատասխանաբար, 70–10 % կավ. մասնիկներ: Լայնորեն տարածված են բնության մեջ: Օգտագործում են որպես հումք ցեմենտի արդ–յան մեջ և որպես շինանյութ:

ՄԵՐԳԵԼՅԱՆ Սերգեյ Նիկիտայի (1928–2008), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1949), պրոֆ. (1951): ՌԴԱ թղթ. անդամ (1953–ից, ամենաերիտասարդը՝ ԽՍՀՄ–ում), ՀՀ ԳԱԱ ակադ. (1956, թղթ. անդամ՝ 1953–ից): 1956– 60–ին՝ ԵրՄՄԳՀԻ, 1962–65–ին և 1971–79–ին՝ ՀԽՍՀ ԳԱ և ԵՊՀ հաշվող. կենտրոնի տնօրեն, 1971–74–ին, միաժամանակ՝ ՀԽՍՀ ԳԱ փոխնախագահ: 1982–86–ին՝ Վանաձորի մանկավարժ. ինստ–ի ռեկտոր, 1990–ից՝ Կոռնելի համալսարանի (ԱՄՆ) պրոֆ.: Հիմնարար արդյունքներ է ստացել կոմպլեքս տիրույթում մոտավորությունների տեսության, պոտենցիալի և հարմոնիկ ֆունկցիաների տեսությունների բնագավառներում: Իր մշակած եղանակով սպառիչ լուծում է տվել կոմպլեքս փոփոխականի ֆունկցիաները բազմանդամներով հավասարաչափ մոտարկելու հնարավորության հիմնախնդրին՝ ավարտելով մոտավորությունների տեսության զարգացման՝ 1930–ականներին Մ. Ա. Լավրենտևի և Մ. Վ. Կելդիշի հետազոտություններով սկսված փուլը: Հայտնի են «Մ–ի բազմություններ», «Մ–ի թեորեմ» ևն արտահայտություններ: Մասնակցել է ԽՍՀՄ–ում առաջին «Նաիրի» ԷՀՄ–ների մշակմանն ու ստեղծմանը: Մեծ ավանդ ունի Հայաստանում մաթ. գիտ. դպրոցի զարգացման, հաշվող. տեխնիկայի և կիբեռնետիկայի հիմնադրման գործում:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1952), Աշխ. կարմիր դրոշի, ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2008) շքանշաններ:

ՄԵՐԳԵՄԵՐ (այժմ՝ Շերաֆեդդին), լ–շղթա Հայկ. լ–աշխարհում՝ Սերոկի լեռն. համակարգի լ–ճյուղը (բարձր.՝ 2532 *մ*): Տարածված շագանակագույն և լ–մարգագետն. հողերում աճում են չորտափաստան. և մարգագետն. տարախոտեր: Դեպի *Մշո դաշտ* տարածվող լանջին է Սբ Կարապետ վանքը:

ՄԵՐԳԵՆԹԱԼԵՐ (Mergenthaler) Օտմար (1854–1899), ամերիկացի գյուտարար (ծագումով՝ գերմանացի): Ստեղծել է (1884) լինոտիպը (տողաշար մեքենա):

ՄԵՐԴՈՔ (Murdoch) Այրիս Ջին (1919–1999), անգլիացի կին գրող: «Ցանցի տակ» (1954), «Սև արքայազն» (1973), «Խոսքի զավակը» (1975), «Ծով, ծով...» (1978), «Փիլիսոփայի աշակերտը» (1983) վեպերում օգտագործել է այլաբանություն, առասպելաբան. սյուժեի բազմաբարդ սիմվոլիկա:

ՄԵՐԴՈՔ (Murdock) Ջորջ Փիթեր (1897–1985), ամերիկացի մարդաբան և սոցիոլոգ: Հոլոկուլտուրալիզմի (միջմշակութ. հետազոտություններ) հիմնադիրը: Ցեյլի համալսարանին կից Մարդկ. հարաբերությունների ուսումնասիրության ինստ–ի (1937) հիմնադիրներից: Կազմել է աշխարհի ժողղ–ների «Ազգագրական ատլասը»: Աշխ–ները վերաբերում են մշակույթի տեսությանը, ազգակց. համակարգերին («Սոցիալական կառուցվածք», 1949):

ՄԵՐԴՈՔ Ուիլյամ (1754–1839), անգլիացի մեխանիկոս: Մասնակցել է շոգեմեքենայի կատարելագործման Ջ. *Ուատփրի* աշխ–ներին: Առաջինն է կատարել (1792) քարածխի չոր թորում, ստացված գազն օգտագործել (1803) լուսավորության համար:

ՄԵՐԴՈՔ Քեյթ Ռուպերտ (ծ. 1931), ավստրալիացի հրտ.: «Նյուս Քորփորեյշն» միջազգ. տեղեկատվահաղորդակց. միավորման (ԱՄՆ) սեփականատեր. ներա–

ռում է հեռուստաընկ-ներ («Ֆոքս» ևն), թերթեր («Դեյլի Թելեգրաֆ», «Թայմս» ևն), հրատարակչատներ («Հարփեր Քոլինս Փաբլիշաերս» ևն): 2007-ից՝ «Դոու Ջոնս» ֆին. տեղեկատվ. գործակալության սեփականատեր:

ՄԵՐԵԺԿՈ Վիկտոր Իվանովիչ (ծ. 1937), ռուս. սցենարիստ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1988): ՌԴ ժող. արտիստ (2014): «Բարև և մնաս բարով» (1973), «Ձեզ սպասում է քաղաքացուհի Նիկանորովան», «Ճահճուտ» (երկուսն էլ՝ 1978), «Թռիչքներ երազում և արթմնի», «Հարազատներ», «Ես քեզ սիրում եմ» (2005) և այլ ֆիլմերի սցենարիստն է: ԽՍՀՄ Պետ. մրց. (1987):

ՄԵՐԵԺԿՈՎՍԿԻ Դմիտրի Սերգեևիչ (1865–1941), ռուս գրող, գրաքննադատ, կրոն. մտածող: Կ. Ս. *Մերեժկովսկու* եղբայրը, Զ. Ն. *Գիպիուսի* ամուսինը: «Ժամանակակից ռուս գրականության անկման պատճառների և նոր ուղղությունների մասին» (1893) աշխ-ը ռուս. սիմվոլիզմի գեղագիտ. հռչակագիրն է: «Քրիստոս և Հակաքրիստոս» (1895–1905), «Ալեքսանդր I» (1911–12) և այլ պատմավեպերում ներկայացրել է համաշխ. պատմությունը՝ որպես «ոգու կրոնի» և «մարմնի կրոնի» հակամարտություն: Հեղինակ է նաև «Տոլստոյն ու Դոստոևսկին» (գիրք 1–2, 1901–02) աշխ-յան, հրապարակախոս. գործերի («Ապագա անտաշը», 1905, հակահեղ. պամֆլետ), նաև բանաստեղծությունների: 1920-ից՝ Ֆրանսիայում, որտեղ հրատարակել է «Հիսուսի սրբերը դեմքով դեպի մեզ» (հ. 1–4, 1936–38), «Դանտե» (հ. 1–2, 1939) աշխ-ները և այլ գործեր:

ՄԵՐԵԺԿՈՎՍԿԻ Կոնստանտին Սերգեևիչ (1855–1921), ռուս կենսաբան: Դ. Ս. *Մերեժկովսկու* եղբայրը: Համակեցութականենսածնության (սիմբիոգենեզ) տեսության հիմնադիրներից է: Աշխ-ները վերաբերում են ջրիմուռաբանությանը, անողնաշարների կարգաբանությանը, մարդաբանությանը:

ՄԵՐԵՅԿՈՎ Կիրիլ Աֆանասևիչ (1897–1968), ԽՍՀՄ մարշալ (1944): ԽՄ հերոս (1940): 1936–37-ին՝ Իսպանիայի քաղաքաց. պատերազմի մասնակից: Բանակի հրամ.՝ Խորհրդա-ֆինն. պատերազմում (1939–40): 1940-ի օգոստ-ից՝ ԳԾ պետ, 1941-ի հունվ-ից՝ ԽՍՀՄ պաշտպ-յան ժողկոմի տեղակալ: ՀՄՊ-ում մի շարք բանակների և ճակատների հրամ.:

ՄԵՐԶԱ (Merza) Դյուլա (Մերզայան Հուլիոս, 1861–1943), հունգարագիր հայագետ, հաս. գործիչ, խմբ.: «Էրդեյ» (հունգ.) թերթի խմբ.: Եղել է Կլուժի ազգագր. թանգարանի հիմնադիր-ղեկ-ներից: Հեղինակ է «Հայ եպիսկոպոսությունը» (1896), «Տրանսիլվանիայի հայերի ապագան» (1896), «Հայկական խաչը» (1903), «Հայերի Տրանսիլվանիա գաղթելու պատմությունը» (1913) և այլ աշխ-ների:

ՄԵՐԹՈՆ (Merton) Ռոբերտ Կարհարտ (ծ. 1944), ամերիկացի տնտեսագետ: Ռ. Ք. *Մերթոնի* որդին: Աշխ-ները վերաբերում են կորպորատիվ ֆինանսների տեսությանը: Ֆ. Բլեքի և Մ. *Սքոուլսի* հետ հայտնաբերել է տնտ-յան տարբեր բնագավառներում բորսայական արժեթղթերի արժեքի հաշվարկման բանաձևը: Նորելյան մրց. (1997, Մ. Սքոուլսի հետ):

ՄԵՐԹՈՆ Ռոբերտ Քինգ (1910–2003), ամերիկացի սոցիոլոգ: Ռ. Կ. *Մերթոնի* հայրը: Առաջ է քաշել այսպես կոչված միջին մակարդակի տեսություններ, որոնք պետք է միմյանց կապեն փորձ. հետազոտությունը և սոցիոլոգիայի ընդհ. տեսությունը: Աշակել է անոմալիայի տեսությունը:

ՄԵՐԹԱՆԻԱՆ Արտեմ Հարությունի (1915–1996), գինու քիմիկոս-տեխնոլոգ: Տեխ. գիտ. դ-ր (1962), պրոֆ. (1963): ՌԽՖՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1979): Հարություն *Մերժանիանի* որդին: Շամպայն գինիների ստեղծման ֆիզքիմ. ուղղության ռուս. դպրոցի հիմնադիրներից: Աշխ-ները վերաբերում են փրփրուն գինիների և դրանց արտադր-յան տեխնոլոգիայի կատարելագործմանը:

Լենինյան մրց. (1961), Գեորգի *Ազարապյանցի* և Ս. Ա. Բրուսիլովսկու հետ):

ՄԵՐԹԱՆԻԱՆ Հարություն Սարգսի (1885–1951), այգեգործության բնագավառում ձևաբանաֆիզիոլոգ. ուղղության խորհրդ. դպրոցի հիմնադիրը: Գեղ. գիտ. դ-ր (1936), պրոֆ. (1924): Արտեմ *Մերժանիանի* հայրը: Աշխ-ները վերաբերում են խաղողի հիմն. սորտերի կենսբ-յանը, վազերի ձևավորման և էտի տես. հիմունքներին, խաղողագործության, կլոնային ընտրասերման ու խաղողի վազի հիվանդությունների և վնասատուների հարցերին:

ՄԵՐԺԱՆՈՎ Ալեքսանդր Գրիգորի (1931–2013), ռուս. քիմֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (1997, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1990-ից), ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (2004): Եղել է ՌԳԱ կառուցվածք. մակրոկինետիկայի ինստ-ի տնօրեն (1987–2006): Աշխ-ները վերաբերում են տրված հատկություններով նոր անօրգ. նյութերի մակրոկինետիկային ու ստացմանը՝ ինքնատարածվող բարձրջերմաստիճանային սինթեզի եղանակով:

ՀՀ (1980) և ՌԴ (1996) Պետ., «Եվրոպայի Ձերմային թագավոր» (1993, Դուբլին) մրց-ներ:

ՄԵՐԺԱՆՈՎ Վիկտոր Կարապետի (1919–2012), դաշնակահար, երգեհոնահար, մանկավարժ: ՌԴ ժող. արտիստ (1977): Պրոֆ. (1964): 1946-ից՝ Մոսկվայի ֆիլհարմոնիայի մենակատար, 1950-ից հանդես է եկել Ավետ Գաբրիելյանի, նաև Կոմիտասի անվ. քառյակի հետ: Եղել է Ա. Խաչատրյանի անվ. դաշնակահարների 1-ին միջազգ. մրցույթի հանձնախմբի նախագահ (2003, Երևան): Երկացանկում՝ Յ. Բրամսի, Ֆ. Լիստի, Ս. Վ. Ռախմանինովի, Ա. Խաչատրյանի, Է. Հովհաննիսյանի և ուր. գործերից:

Համամիութ. (1945, Մոսկվա, 1-ին մրց.), միջազգ. (1949, Վարշավա) մրցույթների դափնեկիր:

ՄԵՐԻ (Meri) Լենարտ Գեորգ (1929–2006), էստոնացի գրող: 1992–2001-ին՝ Էստոնիայի նախագահ: Հեղինակ է «Հրաբուխների աշխարհում» (1964, Կամչատկայի մասին), «Աստղային շրջապարիսպ» (1974, Եվրասիայի հս. ափերով ճանապարհորդելու մասին), «Արծաթյա լուսաբաց» (1976, ուգրա-ֆինն. ցեղերի մասին), «Նախագահի ճառերը» (1996) հրապարակախոս. նյութերի ժող-ի, քնար. և փիլ. ճամփորդ. օրագրությունների:

ՄԵՐԻԱՆ (Merian) Մարիա Սիբիլլա (1647–1717), գերմանացի նկարչուհի, բնախույզ, փորագրող, հրտ.: Ճամփորդել է Սուրինամում (1699–1701): Առաջինն է բացահայտել Հվ. Ամերիկայի միջատների աշխարհը («Սուրինամյան միջատների կերպափոխությունները», 1705): Մ-ի հրտ-յունների, հավաքածուների և ջրանկարների մի մասը Պետրոս I-ը գնել է Ռուսաստանի թանգարանների և գրադարանների համար:

ՄԵՐԻԴԱ, ք. Մեքսիկայի հվ-արլ-ում, Յուկատան նահգ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 777,6 հզ. (2010): Հիմնադրվել է 1542-ին՝ հնդկաց. բնակավայրի տեղում:

ՄԵՐԻԼԵՆԴ (Maryland), նահգ ԱՄՆ հսարլ-ում՝ Ատլանտ. օվկ-ի ափին: Տարածքը՝ 27,1 հզ. *կմ*², բն.՝ 5,8 մլն (2011): Վարչ. կենտրոնը՝ Աննապոլիս:

ՄԵՐԻՄԵ (Mérimée) Պրոսպեր (1803–1870), ֆրանսիացի գրող: Ֆրանսիայի ակադ-ի անդամ (1844): Նովելի վարպետ («Մաթեո Ֆալկոն», 1829, հայ.՝ 1905, «Թամանգո», 1829, հայ.՝ 1938, «Կարմեն», 1846, հայ.՝ 1936, «Կարմեն Կոլոմբա Լոքիս», հայ.՝ 1936, ևն): Հեղինակ է «Կլարա Գասուլի թատրոնը» (1825) պիեսների, «Գուզլա» (1827) բալլադների ժող-ների, «Ժակերիա» (1828) դրամատիկ. ժամանակագրության, «Կարլոս IX-ի թագավորության ժամանակագրությունը» (1829, հայ.՝ 2002) վեպի: Մ-ի գործերի սյուժեներով գրվել են պիեսներ, երաժշտ. կատակերգություններ, օպերաներ (Ժ. Բիզե, «Կարմեն», 1875), նկարահանվել ֆիլմեր: Հայ. հրատարակվել է նաև «Ընտիր նովելներ» (1963) ժող-ը:

ՄԵՐԻՆՈՍ (իսպ.՝ merinos), միատարր, նուրբ և սպիտակ բրդածածկով ոչխարի ցեղ: Ամենամեծ գլխաքանակը՝ Ավստրալիայում: ՀՀ-ում կովկաս. նրբագեղմ և խորհրդ. մերինոս ցեղերն օգտագործվել են տեղ. ոչխարները նրբագեղմի և կիսանրբագեղմի վերափոխելու նպատակով:

ՄԵՐԻՍԹԵՄ (հուն.՝ meristós – բաժանելի), գոյացնող հյուսվածք, բույսերի հյուսվածք, որն ամբողջ կյանքի ընթացքում պահպանում է կիսվելու և նոր բջիջներ առաջացնելու հատկությունը: Մ-ի հաշվին աճում, զարգանում են նոր օրգաններ (տերևներ, ցողուններ, արմատներ, ծաղիկներ): Մ-ի հավելումներից առաջանում են բույսերի մշտ. (ծածկութային, փոխադրող ևն) հյուսվածքները:

ՄԵՐԻՖԻԼԴ (Merrifield) Ռոբերտ Բրյուս (1921–2006), ամերիկացի քիմիկոս-կենսաօրգանիկ: Աշակել է պեպտիդների պինդֆազ. սինթեզի եղանակ պոլիմեր. կրիչների վրա: Նորելյան մրց. (1984):

ՄԵՐԿԱՆՏԻԼԻԶՄ (իտալ.՝ mercante – առևտրական, վաճառական), քաղտնտյան առաջին դպրոցը, կապիտալի նախասկզբն. կուտակման դարաշրջանի քաղ-յունը, որն արտահայտվել է տնտ. կյանքին պետության ակտիվ միջամտությամբ և իրականացվել՝ վաճառականության շահերից ելնելով: Վաղ Մ-ին (XV դ-ի վերջին 3-րդ–XVI դ-ի կեսեր, ներկայացուցիչներ՝ Ռև. Ստաֆորդ՝ Անգլիա, Գ. Սկարուֆի՝ Իտալիա) բնորոշ էր դրամ. հաշվեկշռի տեսությունը: Ուշ Մ-ի (ծաղկման է հասել XVII դ-ում) գլխ. տարրն ակտիվ առևտրային հաշվեկշռի համակարգն էր: Ներկայացուցիչներն էին Թ. Մենը (Անգլիա), Ա. Սեռան (Իտալիա), Ա. Մոնկրետյեն (Ֆրանսիա), որոնք առաջադրել են էժան գնել, թանկ վաճառել սկզբունքը:

ՄԵՐԿԱՆՏԻՆԻ (Mercantini) Լուիջի (1821–1872), իտալացի բանաստեղծ: Մ-ի «Գարիբալդիականի հիմն»-ը (1860) իտալացի ժողդ-ի ազգ. երգն է:

ՄԵՐԿԱՉՔՆԵՐ, *սգինկների* ընտանիքի մողեսների ցեղ: Երկ.՝ մինչև 13 *սմ*: Որոշ

տեսակների վերջույթները թերզարգացած են: Հայտնի է 6 տեսակ՝ Եվրասիայում, 4–ը՝ Անդրկովկասում, Միջին Ասիայում: Եվրոպ. Մ. պահպանվում են: ՀՀ–ում հայտնի է 2 տեսակ՝ զոլավոր մերկաչք և Չեռնովի մերկաչք:

ՄԵՐԿԱՍԵՐՄԵՐ (Gymnospermae), սերմնաբույսերի ինագույն խումբ (բաժին), որոնք ունեն սերմնաբողբոջ (ի տարբերություն պտերների), սակայն բացակայում են պտղաթերթիկները (ի տարբերություն ծաղկավոր բույսերի): Առաջացել են դևոնում՝ պարզունակ պտերանմաններից: Հայտնի է 600 տեսակ՝ ծառեր և թփեր՝ լայնորեն տարածված: Մ. են սագոենազգիները, գինկգոազգիները, ասեղնատերևազգիները, գնետազգիները, նաև բրածո սերմնավոր պտերները և բենտիտները: Տնտ. նշանակություն ունեն ասեղնատերևազգիները, հատկապես՝ սոճազգիները (սոճի, կվենի, եղևնի, եղևին, մայրի), նաև տաքսոդայինների և նոճազգիների ընտանիքների ներկայացուցիչները:

ՄԵՐԿԱՏՈՐ (Mercator, Նիկոլաուս Կաուֆման, մոտ 1620–1687), գերմանացի մաթեմատիկոս, աստղագետ, ճարտարագետ: Լոգարիթմ. ֆունկցիաները վերածել է շարքի:

ՄԵՐԿԵԼ (Merkel) Անգելա Դորոթեա (ծ. 1954), ԳԴՀ կանցլեր՝ 2005–ից: 1991–94–ին՝ կանանց և երիտասարդության,1994–98–ին՝ շրջակա միջավայրի, բնության պահպանության և միջուկ. ռեակտորների անվտանգության գործերով նախարար: 2000–ից՝ ՔԴՄ կուս–յան նախագահ:

ՄԵՐԿԵԼ, Մերկելիս, Գաոլիք (1769–1850), գերմանացի լուսավորիչ: Մինչև 1796–ն ապրել է Լատվիայում: Հեղինակ է «Լատիշներ...» (գերմ., 1797, լատիշ.՝ 1905, քննադատել է ճորտատիրությունը), «Լիվոնիան հին դարերում» (հ. 1–2, 1798–99, XI–XII դդ–ի լատիշների և էստոնացիների պատմությունն է) աշխ–ների:

ՄԵՐԿՈՒՐԻ Մելինա (1923–1994), հույն դերասանուհի: Հանդես է եկել թատրոնում և կինոյում: Նկարահանվել է Մ. Կակոյանիսի, Վ. դե Սիկայի, Խ. Ա. Բարդեմի, Կ. Օթան–Լարայի ֆիլմերում: Ամուսնու՝ ռեժ. Ժ. Դասսենի հետ հիմնադրել է «Մելինաֆիլմ» ֆիրման (1962), նկարահանվել նրա ֆիլմերում («Ֆեդրա», «Խոստումներ լուսարացին», «Կրքոտ երազանք» ևն):

ՄԵՐԿՈՒՐԻ (աստղագիտ. նշանը՝ ☿), հայկ. անվանումը՝ **Փայլածու**, *Արևգակնային համակարգի* Արեգակին ամենամոտ մոլորակը: Մակերևույթն արտաքին տեսքով նման է Լուսնի մակերևույթին: Մթնոլորտ չունի: Ուսումնասիրվել է «Մարիներ» տիեզ. սարքով: Միջին հեռ. Արեգակից՝ 0,387 *ա. մ.* (58 մլն *կմ*): Իր առանցքի շուրջը պտտվում է 58,65, Արեգակի շուրջ՝ 88 երկր. օրում: Միջին տրամագիծը 4880 *կմ* է (0,38 երկր. տրամագիծ), զանգվածը՝ $3{,}3 \cdot 10^{23}$ *կգ* (0,055 երկր. զանգված): Մ–ի խառնարաններից մեկը 1976–ին անվանվել է *Սայաթ–Նովայի* անունով:

«ՄԵՐԿՈՒՐԻ», շուրջերկրյա ուղեծրով թռիչքների ամերիկ. տիեզերանավերի և նրանց մշակման ու արձակման (1959–63) ծրագրի անվանումը: «Մ.»–ի աոլգն զանգվածը (թռիչքի ժամանակ)՝ 1,6 *տ*, խցիկի ծավալը՝ 1,5 $մ^3$: 1961–ին իրականացվել է 2 (մայիսի 5, հուլիսի 21), 1962–ին՝ 3 (փետր. 20, մայիսի 24, հոկտ. 3), 1963–ին՝ 1 (մայիսի 15–16) թռիչք:

ՄԵՐԿՈՒՐԻՈՒՄ, առևտրի աստվածը հռոմ. դից–յան մեջ, ճանապարհորդների հովանավորը: Պատկերվել է թևավոր կոշիկներով, գավազանով: Մ–ին համապատասխանում է հուն. *Հերմեսը*:

ՄԵՐԿՈՒՐՈՎ Սերգեյ Դմիտրևիչ (1881–1952), հույն քանդ.: ԽՍՀՄ (1943), ՀԽՍՀ (1950) ժող. նկարիչ: ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի ակադ. (1947): Վաղ շրջանի գործերին բնորոշ են լակոնիկ–ընդհանրացված ձևերը (Կ. Տիմիրյազևի հուշարձանը, 1922–23, Մոսկվա), 1930–50–ական թթ–ին՝ բնութագր., մոնումենտալ կերպարները (Ի. Վ. Ստալինի, Վ. Ի Լենինի, Մ. Մ. Կիրով ևն): Երևանում տեղադրվել են Ս. Շահումյանի (1931), Վ. Ի. Լենինի (1940, ապամոնտաժվել է 1990–ին), Ի. Վ. Ստալինի (1950, ապամոնտաժվել է 1956–ին) և այլ մոնումենտալ արձաններ:

ԽՍՀՄ (1941, 1951), ՀԽՍՀ (1970) Պետ. մրց–ներ:

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, Ասիայի արմ–ի և Աֆրիկայի հս–արլ–ի տարածքների անվանումը: Արտ. գրկ–յան մեջ օգտագործվում է նաև *«Միջին Արևելք»* անվանումը, որն ընդգրկում է XIX դ–ի վերջ–XX դ–ի սկզբին Օսմ. կայսրության տարածքը, այդ թվում՝ Բալկանյան թ–կղզին:

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ, **Ամերկոմ** (American Committee for Relief in the Near East, ACRNE), ամերիկ. բարեգործ. կազմ–յուն: Ստեղծվել է 1918–ին՝ Հայկ. և սիրիական նպաստամատույց կոմիտեների (1915) միավորմամբ՝ Մերձ. Արևելքի երկրների՝ պատերազմից տուժած և կարիքավոր բնակչությանը պարենով, հագուստով, դեղորայքով օգնելու նպատակով: Արլ. Հայաստանում և Այսրկովկասում գործել է 1919–ի մայիսից, Հայաստանի առաջին հանրապետության հետ կնքած պայմանագրով ստանձնել հայ որբերի խնամքն ու դաստիարակությունը պետ. մանկատներում, ապաստարաններում, հիվանդանոցներում (1919–ին՝ 75 որբանոց՝ 20 հզ. սան, 10 հիվանդանոց): Խորհրդ. Հայաստանի օրոք կոմիտեի գործունեությունը նախ սահմանափակվել (1926–ին՝ 7440 որբ), իսկ 1931–ին դադարել է: 1916–26–ին Հայաստանում և Մերձ. Արևելքի հայաբնակ վայրերում բարեգործ. աշխ. է կատարել նաև Անգլ. օգնության կոմիտեն (Անգլկոմ):

ՄԵՐՁԱՐԱՔԱՅԱՆ ՏԵԽՏՆԱԿԱՆ ԳՈՏԻ, **Երևան–Օրդուբադի տեկտոնական գոտի**, ընդգրկում է Հրազդան և Վեդի գետերի միջագետքը, Ուրցի ու Վայքի լ–շղթաները: Դևոն–տիրասի, վերին կավճի, պալեոգենի ու անթրոպոգենի գոյացումներից կազմված թույլ ծալքավորված գոտի է:

ՄԵՐՁԱՐԵՎԱԴԱՐՁԱՅԻՆ ԿԼԻՄԱ, տարածված է 2 կիսագնդերի՝ 30°–40°, տեղ–տեղ՝ մինչև 25°–45° լայն–ների միջև: Բնորոշ են պարզ արտահայտված չոր և խոնավ եղանակները: Երկրի մակերևույթի ճառագայթ. հաշվեկշիռն ամբողջ տարին դրական է, ջերմաստիճանի տարեկան ընթացքը՝ լավ արտահայտված: Մայրցամաքների արմ–ում տեղումների տարեկան ընթացքում պարզ արտահայտված է խոնավ ձմեռ և չոր ամառ (միջերկրածով. տիպ), արլ–ում՝ մուսսոն. տիպ:

ՄԵՐՁԱՐԵՎԱԴԱՐՁԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐ, մշտադալար, երբեմն՝ տերևաթափ բազմամյա բույսեր, որոնք մշակվում են *մերձարևադարձային գոտում*: Նարնջենին, կիտրոնենին, մանդարինենին, թուրինջենին, թզենին, խուրման, ձիթենին ևն ծառեր են: Տեխ. նշանակություն ունեն թեյը, դափնին, շաքարեղեգը, նվենին, հնդկեղեգը, բամբուկ, եղրիզենին ևն, գեղազարդիչներից՝ նոճին, արմավենին, մազնոլիան, սեքվոյան: Մերձարևադարձ. մազնոլիան, սեքվոյան: Մերձարևադարձ. պտղաբուծությունը զարգացած է գլխավորապես Միջերկրածովայքում: ՀՀ–ում մերձարևադարձ. գոտին սահմանափակվում է Մեղրիի ցածրադիր շրջանով. աճում են թզենի, նոնենի, նշենի:

ՄԵՐՁԱԼԹՅԱՆ ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1944, խորհրդ. զորքերի ռազմ. գործողություն (սեպտ–հոկտ.) ՀՄՊ–ում՝ Մերձբալթիկան գերմանաֆաշիստ. զորքերից ազատագրելու համար: Ղեկավարել է մարշալ Ա. Մ. *Վասիլևսկին*: Ազատագրվել են Լիտվան, Լատվիան, Էստոնիան, ջախջախվել է թշնամու «Հյուսիս» բանակախումբը: Ռազմ. գործողություններ են ղեկավարել նաև բանակի գեն. Հովհաննես *Բաղրամյանը*, գեն–լեյտ–ներ Բագրատ *Առուշանյանը*, Ստեփան *Դինոսյանը*, գեն–մայորներ Հմայակ *Բարայանը*, Սերգեյ *Կարապետյանը* և ուր.:

ՄԵՐՁԱՀԱՍԱՐԱԿԱԾԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐ, բնական աշխարհագր. գոտիներ Հս. և Հվ. կիսագնդերում՝ հասարակած. և արևադարձ. գոտիների միջև: Ամռանը գերակշռում են հասարակած., ձմռանը՝ արևադարձ. (պասսատներ) օդ. զանգվածները: Կլիման հասարակած. մուսսոնային է՝ չոր և խոնավ սեզոնների պարզ արտահայտված հերթափոխով:

ՄԵՐՈՄԻԶԱ., հացազգիների ճանճերի ընտանիքի միջատ, հացազգիների վնասատու Եվրասիայում: Գորշ դեղին է, երկ.՝ 3–4 *մմ*: Ձարգանում է (թրթուրը) ցողունների ներսում:

ՄԵՐՈՄՈՏՄԱՅԻՆՆԵՐ, խեղիցերայինների տիպի առավելապես բրածո ծով. հոդվածոտանիների դաս (ըստ այլ համակարգի՝ կարգ):

ՄԵՐՋԱՆՈՎ Գրիգոր (1880–մ. թ. անհտ), ազգ–ազատագր. շարժման գործիչ: «*Նևմևսիս*» գործողության կազմակերպիչներից: 1905–ին Կովկասում աչքի է ընկել հայ–թաթար. ընդհարումների ժամանակ: 1921–ի դեկտ–ին Հռոմում մասնակցել է երիտթուրք. կառ–յան 1–ին վարչապետ Սայիդ Հալիմի ահաբեկմանը:

ՄԵՐՍԻԵ (Mercier) Լուի Սեբաստիեն (1740–1814), ֆրանսիացի գրող: Հեղինակ է «2440 թվական» (1771) ուտոպ. վեպի, «Չունևորը» (1772), «Փարիզի պատկերները» (1781–88) պիեսների, ակնարկների, նաև «Թատրոնի մասին» (1773), «Գրականության և գրականագետների մասին» (1778), «Ժ–ժ. Ռուսոյի մասին» (1791) աշխ–ների:

ՄԵՐՍԻԵ Շառլ (1904–1978), ֆրանսիացի արևելագետ–հայագետ: 1948–ին (իր ուսուցիչների հետ) ֆրանս. է թարգմանել և հրատարակել Ներսես Լամբրոնացու «Եկեղեցական ժողովո ճառք»–ը, 1953–ին՝ «Իսահակի, Հակոբի և Մովսեսի օրհնությունների մեկնությունը» (հուն., հայ. և վրաց. տեքստերը), 1960–ին՝ Եզնիկ Կողբացու «Հաղագս Աստծո» («Եղծ աղան–

դոց») երկը (քնն. թարգմ.՝ Լ. Մարիեսի)։ Լատ. է թարգմանել նաև Եփրեմ Ասորու հիմները («Հայերենում պահպանված Ս. Եփրեմի հիմները», 1962), որոնց բնագրերը չեն պահպանվել։ 1972–ին այցելել է Հայաստան։

ՄԵՐՍՈՒՄ, *մասսաժ* (< ֆրանս. massage – շփել, արաբ.՝ մաս – դիպչել), մարմնի կամ որևէ օրգանի վրա հատուկ գործելաձևերով մեխ. ազդեցությունը՝ բուժիչ կամ հիգիենն. նպատակներով։ Ուժեղացնում է քրտնա– և ճարպարտադր–յունը, բարելավում արյան և ավշի շրջանառությունը։ Կատարվում է ձեռքերով, հազվադեպ՝ գործիքներով (տես *Թրթռաբուժություն*)։ **Սրտի Մ.**, վերակենդանացման մեթոդ է սրտի կանգի ժամանակ. սրտի ռիթմիկ սեղմումը լինում է անմիջականորեն՝ վիրահատությունների ժամանակ կրծքավանդակի բացումով (սրտի բաց կամ ուղղակի Մ.) կամ առանց բացելու՝ առաջին օգնություն ցուցաբերելիս (սրտի փակ կամ անուղղակի Մ.)։

ՄԵՐՈՒԺԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ, *Մեհրուժան Արծրունի* (ծ. թ. անհտ–371), նախարար. Արծրունյաց տոհմի նահապետը։ Դժգոհելով *Արշակ* Բ–ի կենտրոնաձիգ քաղ–յունից՝ նախարար Վահան Մամիկոնյանի հետ հեռացել է Պարսկաստան, ընդունել զրադաշտություն և պարսկ. զորքերով ասպատակել Հայաստանը։ *Պապ* թագավորի շուրջ համախմբված նախարարները Հայաստանից վտարել են նրան, իսկ *Ձիրավի ճակատամարտում* պարսիկների պարտությունից հետո նրան ձերբակալել և մահապատժի է ենթարկել *Մմռավ Բագրատունին*։

ՄԵՐՔՈՒՐԻ, *Մերքյուրի* (Mercury), Ֆրեդի (Ֆառուխ Բուլսարա, 1946–1991), անգլիացի ռոք–երաժիշտ, երգիչ, կոմպոզիտոր։ «Քուին» խմբի ղեկ–ը։ Կոմպոզիցիաներն առանձնանում են մասշտաբայնությամբ, վոկալ բազմաձայնության գեղեցկությամբ ևն։ Զուգերգով հանդես է եկել Մ. *Կաբալիեի* հետ։

ՄԵՐՖԻ (Murphy) Ուիլյամ Պարի (1892–1987), ամերիկացի արյունաբան, չարորակ (պերնիցիոզ) սակավարյունության բուժման, այսպես կոչված, լյարդային մեթոդի հեղինակներից։ Աշխ–ները վերաբերում են շաքարախտի և այլ հիվանդությունների բուժմանը։

Նորելյան մրց. (1934, Ջ. *Մայնոթի* և Ջ. *Ուիփլի* հետ)։

ՄԵՔԵՆԱ, մարդու ֆիզ. և մտավոր աշխ–ի թեթևացման կամ փոխարինման նպատակով որոշակի գործողություններ կատարող սարք։ Տարբերում են **էներգիական Մ.**, էներգիայի ցանկացած տեսակը մեխ. էներգիայի և հակառակ փոխակերպելու Մ. (ՆԱԷ, տուրբին, շոգեմեքենա ևն), աշխատանքային Մ., փոփոխում է նյութի (մշակվող առարկայի) ձևը, հատկությունները, վիճակը և դիրքը [Մ–գործիք. կամ տեխնոլոգ. Մ. (*մետաղամշակման հաստոց*, շին., հանք., մանածագործ. Մ.)], առարկայի դիրքը փոխող փոխադր. Մ. (ավտոմեքենա, լոկոմոտիվ, ինքնաթիռ, ամբարձիչ ևն), **տեղեկատվական Մ.**, հավաքում, մշակում և օգտագործում է տեղեկույթը [տարբեր հաշվիչ Մ–ներ ու սարքեր (հաշվամեքենա ևն), ծածկագրման Մ., մեխ. ինտեգրատոր ևն]։ Մ–ի հատուկ տեսակ է *համակարգիչը*։

ՄԵՔԵՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, *մեխանոթերապիա*, առանձին հոդերում շարժումների զարգացման նպատակով հատուկ սարքերով ֆիզ. վարժությունների կատարումը։ Հիմնադիրը շվեդ բժիշկ Գ. *Յանդելն* է։ Շարժումները խիստ մեկուսացած են և համապատասխանում են որոշակի հոդի կամ մկանախմբի։ ՀՀ–ում բուժ. մարմնամարզության սարքերի համալիր է մշակել Գուրգեն *Մինասյանը*։

ՄԵՔԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ներառում է *մեքենաների և մեխանիզմների տեսությունը*, մեքենամասերի նախագծումն ու ամրության հաշվարկումը, մեքենաներում շփման ու մաշվածության ուսումնասիրությունները։

ՄԵՔԵՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ, որևէ լեզվի տեքստի թարգմ–յունը մեկ այլ լեզվի՝ նորագույն տեխնոլոգիաների և համապատասխան ծրագրերի միջոցով։ Մ. թ–յան համար մշակվում է թարգմ–յան ալգորիթմը՝ տեքստի հետ հստակ սահմանված գործողությունների հաջորդականությունը։ Կիրառվել է 1930–ական թթ–ի կեսերից։ Գործող համակարգերի մեծ մասը նախատեսված էր 2 որոշակի լեզվի համար։ 2000–ական թթ–ին մշակված Google Translate համակարգն ապահովում է ակնթարթային թարգմ–յուն տասնյակ լեզուներից։

Ժամանակակից Մ. թ. իրականացվում է մարդու միջոցով հետնյալ հերթականությամբ՝ նախախմբագրում. նախապատրաստում է թարգմանվող տեքստը, միջանկյալ (ինտեր) խմբագրում. մասնակցություն թարգմ–յան գործողությանը, և հետխմբագրում, ստուգում և լրացնում է բացթողումները տեքստում։

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, գիտ–յուն մեքենաների ու մեխանիզմների ընդհ. հատկությունների ուսումնասիրման մեթոդների և դրանց սխեմաների նախագծման մասին։ Հիմն. ուղղություններն են մեքենաների և մեխանիզմների դինամիկան, մեխանիզմների կինեմատիկան, կինետոստատիկան և սինթեզը, մեքենա–ավտոմատների կառավարման համակարգերի նախագծումը, մանիպուլյատորների և արդ. ռոբոտների ուսումնասիրություն ու սխեմաների նախագծումը։ ՀՀ–ում այս ոլորտում հայտնի է Յուրի *Մարգսյանը*։

ՄԵՔՍԻԿԱ (México), **Մեքսիկայի Միացյալ Նահանգներ**, պետություն Հս. Ամերիկայում։ Սահմանակից է ԱՄՆ–ին, Բելիզին և Գվատեմալային։ Տարածքը՝ 1,96 մլն *կմ*^{2}, բն.՝ 121,0 մլն (2015)։ Մայրաքաղաքը՝ *Մեխիկո*։ Պետ. լեզուն՝ իսպ.։ Կառավարման ձևը՝ նախագահահանրապետ.։ Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ Ազգ. կոնգրեսը։ Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է։ Բաժանված է 31 վարչ. նահց–ների և մայրաքաղաք. դաշն. օկրուգի։ Անդամակցում է ՄԱԿ–ին, Ազատ առևտրի հյուսիսամերիկ. պայմանագրի կազմ–յանը, ԱՀԿ–ին ևն։ Զարգացող երկիր է, տնտ. հզորությամբ՝ Լատ. Ամերիկայում՝ 2–րդը (Բրազիլիայից հետո)։ ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 13,5 հզ. ԱՄՆ դոլար է (2009)։ Արտահանում է ավտոմոբիլներ, էլեկտրոնիկա, նավթ և նավթամթերք, մրգեր, բամբակ ևն, ներմուծում պողպատ, գղտ. մեքենաներ, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք ևն։ Դրամ. միավորը՝ մեքսիկ. պեսո։

Մ–ի հնագույն բնակիչները հնդկացիներն են (մայաներ, տոլտեկներ, ացտեկներ), որոնք ստեղծել են բարձր զարգացած քաղաքակրթություն։ Ամերիկան նվաճելու ընթացքում իսպանացիները 1517–ին հասել են ծովափնյա շրջանները, 1519–ին Մ–ի տարածք են ներխուժել իսպ. կոնկիստադորները՝ Է. *Կորտեսի* գլխավորությամբ, և 1521–ին գրավել ացտեկների մայրաքաղաք Տենոչտիտլանը (այժմ՝ Մեխիկո)։ XVI դ–ի վերջին հիմնականում ավարտվել է Մ–ի տարածքի նվաճումը, և այն ներառվել է 1535–ին ստեղծված Նոր Իսպանիա փոխարքայության կազմի մեջ։ Աշխատուժի պակասը լրացնելու նպատակով Աֆրիկայից ներբերվել են սևամորթ ստրուկներ։ Ամերիկայում Իսպ. գաղութների անկախության պատերազմում (1810–26) Մ. 1821–ին նվաճել է անկախություն, 1824–ին հռչակվել է հանրապետություն, 1829–ին վերացվել է ստրկատիրությունը։ ԱՄՆ 1845–ին բռնակցել է Տեխասը։ ԱՄՆ–ի սանձազերծած պատերազմում (1846–48) Մ. կորցրել է իր բնական պաշարներով հարուստ տարածքի կեսից ավելին։ 1850–ին ազատականները եվրոպ. պետությունների աջակցությամբ իրականացրել են հակակղեր. մի շարք բարեփոխումներ։ 1877–ին հաստատվել է կղերակալվածատիր. վարչակարգ, որը, չնայած ԱՄՆ–ի հակազդեցությանը (1914–ի և 1916–17–ի ռազմ. ներխուժումներ), վերացվել է 1910–17–ի Մեքսիկ. հեղ–յամբ։ 1929–2000–ին և 2012–ից իշխանության ղեկին է ազգ–բարեփոխ. Ինստիտուցիոնալ–հեղ. կուս–յունը, 2000–12–ին՝ աջկենտրոնամետ Ազգ. գործունեության կուս–յունը։

Մ–ի հայ գաղութը կազմավորվել է 1920–ական թթ–ից հետո։ Հայերը կենտրոնացած են հիմնականում Մեխիկոյում, մասամբ՝ Պուեբլա ք–ում։ Ներկայում նրանց թիվը շուրջ 400 է, սակայն համայնքը դեռևս կազմավորված չէ. չունի հավաքատեղի կամ ազգ. որևէ կազմ–յուն։

ՄԵՔՍԻԿԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔ 1861–67, Մեծ Բրիտանիայի (1862), Իսպանիայի (1861–62) և Ֆրանսիայի (1862–67) զինված ինտերվենցիան Մեքսիկայի դեմ՝ այն գաղութացնելու նպատակով։ Մեքսիկացիների պայքարը, ինչպես նաև ինտերվենտների համար ԱՄՆ–ի անբարենպաստ դիրքորոշումը (ձգտում էր հաստատվել Մեքսիկայում) հանգեցրել են Մ. ա–ի ճգնաժամին։

ՄԵՔՍԻԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ, Հս. Ամերիկայի հվ–ում՝ Մեքսիկայի մեծ մասում։ Տարածքը՝ մոտ 1,2 մլն *կմ*^{2}։ Կազմված է ընդարձակ սարահարթից և նրան արլ–ից, հվ–ից և արմ–ից եզրավորող լ–շղթաներից։ Մակերևույթի մեծ մասն ունի 1000–2000 *մ* բարձր.։ Մ. բ–ի արլ–ում ձգվում են Արլ. Սիեռա Մադրե (մինչև 4054 *մ*), արմ–ում՝ Արմ. Սիեռա Մադրե (մինչև 3150 *մ*), հվ–ում՝ հանգած և գործող հզոր հրաբուխների շարքը՝ Ընդլայնական հրաբխ. Սիեռա լ–շղթաները։ Նշանավոր հրաբուխները՝ Օրիսաբա (5700 *մ*, Մ. բ–ի առլգն բարձր–յունը), Պոպոկատեպետլ, Կոլիմա ևն։ Բուս. աշխարհը հարուստ է և ինքնատիպ (ավելի քան 8 հզ. բնաշխարհիկ տեսակներ)։ Կան արծաթի, կապարի, ծարիրի, ցինկի, երկաթի, մանգանի, ոսկու և պղնձի հանքավայրեր։

ՄԵՔՍԻԿԱԿԱՆ ԾՈՒՅ, կիսապարփակ ծով Ատլանտ. օվկ–ում՝ Հս. Ամերիկայի հվ–արլ. ափերի մոտ՝ Ֆլորիդա, Յուկատան թ–կղզիների և Կուբա կղզու միջև։ Մակերեսը՝ 1,55 մլն *կմ*^{2}, խոր.՝ մինչև

3822 *մ*: Մ. ծ. է թափվում ***Միասիսային***: Այստեղ է սկիզբնավորվում ***Գոլֆստրիմը***: Կան ձկնարդյունագործություն, նավթարդյունահանություն: Գլխ. նվինգստ-ները՝ Նոր Օռլեան (ԱՄՆ), Վերակրուս (Մեքսիկա), Հավանա (Կուբա):

ՄԵՔՍԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ազգ. ինքնավար համալսարան: Հիմնադրվել է 1551-ին Մեխիկո ք-ում: Ամերիկա աշխարհամասի ամենախոշոր բուհերից է: Ունի մի շարք ուս. և ԳՀ բաժանմունքներ, աստղադիտարան, մասնաճյուղեր՝ ԱՄՆ-ում և Կանադայում: 2015-ին ուներ ավելի քան 269 հզ. ուսանող:

ՄԵՔՍԻԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ 1910–17, տապալել է Պ. ***Դիասի*** բռնապետ. վարչակարգը: Մ. հ-յան ընթացքում ծավալվել է գյուղաց. պատերազմ՝ Է. Սապատայի և Ֆ. Վիլյայի ղեկավարությամբ, սկսվել է քաղաքաց. պատերազմ, հետ են մղվել ԱՄՆ-ի ներխուժումները (1914 և 1916–17): Ավարտվել է սահմանադրության ընդունումով (1917), որով նախադրյալներ են ստեղծվել ագրար. ռեֆորմի, Մեքսիկայում կապիտալիզմի զարգացման համար:

ՄԵՔՔՈ, ք. Սաուդյան Արաբիայում, Հիջազ նահանգ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,5 մլն (2010): ***Մահմեդականության*** գլխ. սրբատեղին է (VII դ–ից): Հայտնի են Զամզամ աղբյուրի «սուրբ ջուրը» և տնայնագործ. արհեստանոցներ: Գործում է իսլամ. համալսարան: Առաջին անգամ հիշատակել է ***Կլավդիոս Պտղոմեոսը*** (II դ.)՝ Մակորաբա անունով: Մինչև մահմեդականության առաջացումը (VII դ.) կարևոր դեր է խաղացել Արևելքի և Միջերկր. ծովի ավազանի երկրների առևտրի մեջ, եղել Արաբ. թ–կղզու հեթանոս ցեղերի կրոն. կենտրոն: Մ–ում է ծնվել ***Մուհամմեդ*** մարգարեն:

ՄԵՖԻՍՏՈՖԵԼ (գերմ.՝ Mephistopheles), դևի, սատանայի, չարության ոգու մարմնավորումը եվրոպ. մի շարք ժողդ–ների բանահյուսության և գրկ–յան մեջ, արվ–ի մի շարք ճյուղերում: Մ. «Դոկտոր Ֆաուստի պատմությունը» (հրտ.՝ 1587) գերմ. ժող. ստեղծագործության, Յ. Գյոթեի «Ֆաուստ» փիլ. ողբերգության և այլ գործերի գր. կերպարն է: Մ. դ–ր Ֆաուստին առաջարկել է իշխանություն, գիտ–յուն, հարստություն, երկր. բարիքներ, երիտասարդություն՝ նրա հոգու դիմաց:

ՄՁԿԻԹ, իսլամ. պաշտամունք. կառույց՝ ուղղանկյուն հատակագծով, սյունասրահներով շրջափակված բակով և բազմասյուն աղոթասրահով (VII–VIII դդ.): Թուրքիայում կառուցվել են կենտրոնակազմ, կիսագմբեթներով (կամ փոքր գմբեթներով) շրջափակված մեծ գմբեթով Մ–ներ (Սուլեյմանիե, 1557, ճարտ.՝ ***Սինան***, Կ. Պոլիս): Զարդարվել են ջնարակված խեցեղենով, խճազարդերով են: Երևանում պահպանվել է Կապույտ մզկիթը (հիմն.՝ 1766, վերակառուցվել՝ 1996):

ՄՁՎԱԾՔ, ***էքստրակտ*** (լատ.՝ extractus – հանուկ), դեղաձև. ստացվում է դեղորայք. հումքից կորզիչների (էքստրագենտ) միջոցով ներգործող բաղադրիչի անջատումով: Տարբերում են ջր., սպիրտ. և եթեր. Մ–ներ: Տես նաև ***Թուրմ***:

«ՄԵՇՄԱՅԱՅԸ ՀԱԽԱՏԻՒ» («Ծաղկաքաղ լուրերի»), հայատառ–թուրք. պարբերաթերթ (1852–77, Կ. Պոլիս): Արտոնատեր–խմբ–ներ՝ Հովսեփ Վարդանյան, Հովակիմ Թոլպալենտճյան, Հովհաննես Մարգարյան, Պողոս Քիրիշճյան, Հովհաննես Թոլայան:

«ՄԵՇՄՈՒԱՅԸ ԱԽՊԱՐ» («Հավաքածու լուրերի»), հայատառ–թուրք. պարբերաթերթ (1884–1914, Կ. Պոլիս): Կ. Պոլսի Կաթողիկե հայոց պատրիարքարանի պաշտոնաթերթ: Արտոնատեր և պատ. խմբ.՝ Հովհաննես Թոլայան:

«ՄԷՏԷՕՐԱ», գիտ., հաս. և գր. կիսամյա հանդես (1880–81, Զմյուռնիա): Խմբ.՝ Գրիգոր Սներյան:

ՄԹԱԾՄԻՆԴԵԼԻ Գիորգի (հայ.՝ Գևորգ Սուրբսարեցի, 1009–մոտ 1065), վրացի մատենագիր, թարգմանիչ, մեկնիչ, հոգևոր գործիչ: Շարունակել է Եքվթիմե ***Մթածմինդելու*** գործը, գրել վերջինիս վարքը: Կատարել է Սբ գրքի վրաց. վերջն. խմբագրությունը, վրաց. է թարգմանել բազմաթիվ վարքեր, մեկնություններ, պարականոն երկեր:


ՄԹԱԾՄԻՆԴԵԼԻ Եքվթիմե (հայ.՝ Եքութիմեոս Սուրբսարեցի, 955–1028), վրացի մատենագիր, մանկավարժ, թարգմանիչ: 1005–19–ին՝ Աթոսի (Աֆոն) վրաց մայրավանքի վանահայրը: Վրաց մատենագրության պատմության մեջ թարգմ. նոր դպրոցի հիմնադիրը: Թարգմանել է Հովհան Ոսկերերանի, Բարսեղ Կեսարացու, Եփրեմ Ասորու, Գրիգոր Նյուսացու և ուր. ստեղծագործություններից, Դավթի սաղմոսները, Աստվածաշնչի մի քանի գիրք ևն: Հեղինակ է ինքնուրույն երկերի (վրաց. և հուն.): Վրաց–ից հուն. է թարգմանել «Բաղավարի պատմություն»–ը:

ՄԹՆՇԱՂԱՅԻՆ ՎԻՃԱԿՆԵՐ, գիտակցության մթագնման տեսակ (մի քանի *ր*–ից մինչև մի քանի *ժ*). բնորոշվում է հանկարծակի սկզբով ու ավարտով, շրջապատում կողմնորոշման խանգարումով, ինքնամփոփությամբ, վախի, չարության հոգեկան հուզմունքով, զգայախաբություններով, զառանցանքներով պայմանավորված վարքով, հետագա անհիշությամբ:

ՄԹՆՈԼՈՐՏ, 1. **Երկրի**, Երկիրը շրջապատող և նրա հետ պտտվող օդի թաղանթը: Զանգվածը՝ $5{,}15 \times 10^{15}$ *կգ*: Երկրի մակերևույթին մոտ մթն. օդը կազմված է ազոտից (78,1 %), թթվածնից (20,9 %), արգոնից (0,9 %) և փոքր քանակներով ածխաթթու գազից, ջրածնից՝ ըստ ծավալի, հելիումից, նեոնից և այլ գազերից: Մ–ի ստորին՝ 20 *կմ* հաստ–յամբ շերտում կան նաև ջր. գոլորշիներ, որոնց քանակը Երկրի մակերևույթի մոտ փոփոխվում է 2×10^{-5} %–ից (Անտարկտիդա) մինչև 3 % (արևադարձներում) և, ըստ բարձր–յան, արագ նվազում: 20–25 *կմ* բարձր–յան վրա ***օզոնի*** շերտն է, որը պաշտպանում է կենդանի օրգանիզմները վնասակար կարճալիք ճառագայթումից: 100 *կմ*–ից բարձր ավելանում է թեթև գազերի մասնաբաժինը, շատ մեծ բարձր–յուններում գերակշռում են ջրածինը և հելիումը: Այստեղ մոլ–ները տրոհված են ատոմ–ների, իոնների և ազատ էլեկտրոնների. կազմավորում են իոնոլորտը: Հիմք ընդունելով ջերմաստիճանի և խտության բաշխումն ըստ բարձր–յան՝ Մ. ստորաբաժանում են 5 հիմն. շերտերի (ոլորտի)՝ ներքնոլորտ, վերնոլորտ, միջնոլորտ, ջերմոլորտ և արտաքին ոլորտ: Երկրի բացաս. լիցքը Մ–ում ստեղծում է էլ. դաշտ, առաջանում են տարբեր էլ., օպտիկ. և ձայն. երևույթներ: Մ–ի անհամասեռ տաքացումը նպաստում է ընդհ. շրջանառությանը, որն ազդում է Երկրի եղանակի և կլիմայի վրա:

2. **Մ. աստղերի**, աստղերի արտաքին, անմիջականորեն դիտվող շերտը, որտեղ ձևավորվում է նրանց ճառագայթման սպեկտրը: Առանձնացնում են ամենաարտաքին շերտը՝ ձգված աստղապսակը, գունոլորտը և ավելի խորը գտնվող լուսոլորտը: 3. **Մ. մոլորակների**, մոլորակների հետ պտտվող գազ. թաղանթներ, որոնք ցրում և կլանում են արեգակն. ճառագայթումը: Յուպիտերի, Սատուռնի, Նեպտունի Մ–ները կազմված են հիմնականում ջրածնից, հելիումից և մեթանից, Վեներայինը և Մարսինը՝ ածխաթթվական գազից:

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ԱԼԻՔԱՏԱՐ, երկրամերձ օդի շերտը, որը, շեղելով տարածվող ռադիոալիքները, դրանք ուղղորդում է Երկրի երկայնքով: Մ. ա–ով մետր. և ավելի կարճ ալիքները տարածվում են շատ մեծ հեռ–յուններ (մի քանի հզ. *կմ* կարգի, նկ.):



ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՃՆՇՈՒՄ, մթն. օդի ճնշումը Երկրի մակերևույթին և մթն–ում գտնվող առարկաների վրա, որը քամու ուղղությունն ու արագությունը որոշող հիմն. գործոնն է: Մ. ճ. հավասար է մթն–ի տվյալ մակարդակից մինչև նրա վերին սահմանը տարածված օդի միավոր մակերեսով սյան կշռին: Չափվում է բարոմետրով, արտահայտվում միլիբարերով (*մբ*), սնդիկի սյան բարձր–յամբ (*մմ սնդ. ս*–ներով), *Պա*–ներով ևն: Ծովի մակերևույթի վրա Մ. ճ–ման միջին արժեքը 1013,25 *մբ* կամ 760 *մմ սնդ. ս.* է, որն ընդունված է որպես ճնշման բնականոն մեծություն: Մ. ճ., բարձր–յունից կախված, փոխվում է ***բարոմետրական բանաձևով***՝ Մեղրիում 940,5 *մբ* է, Արագածի բլկ–ում՝ 686,6 *մբ*, ևն: Երևանում Մ. ճ–ման առլզն արժեքը դիտվում է ցուրտ ամիսներին՝ 934,1 *մբ*, նվզգն՝ հուլիսին՝ 877,7 *մբ*:

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ, ամպերից թափվող հեղուկ–կաթիլ. կամ պինդ վիճակի ջուր (անձրև, ձյուն, կարկուտ ևն), ինչպես նաև Երկրի մակերևույթի կամ առանձին առարկաների վրա նստած օդից անջատված ջուր (ցող, եղյամ, ճենճաո, մերկասառույց ևն): Մ. տ. Երկրի վրա ջրի շրջանառության օղակներից են: Մ. տ–ի քանակը չափվում է թափված ջրի շերտի բարձր–յամբ՝ արտահայտված *մմ*–ով, սաստկությունը՝ *մմ/ր, մմ/ժ, մմ/օր*–երով: Երկրագնդի տեղումների տարեկան քանակը շուրջ 1000 *մմ* է, անապատներում և բարձր լայն–յուններում՝ 250 *մմ*: ՀՀ–ում տարվա ընթացքում նկատվում են Մ. տ–ի 2 բարձր արժեքներ, հիմնականը՝ գարնանը, հատկապես՝ ապրիլի վերջին կամ մայիսին, իսկ երկրորդը (ավելի թույլ)՝ հոկտ–ին: Մ. տ–ի առաջին ամենացածր արժեքը նկատվում է օգոստ–ին կամ սեպտ–ի սկզբին, իսկ երկրորդը՝ ձմռան ամիսներին: Տարեկան միջին նվզգն Մ. տ. (200–250 *մմ*) դիտվում են Արարատյան գոգավորության և Մեղրու տարածաշրջանի մինչև 1000 *մ* բարձր–ներում, առլզն (990–1065 *մմ*)՝ բարձրլեռն. գոտում:

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՊՏԻԿԱ, ուսումնասիրում է մթն–ով լույսի անցնելիս առաջացող օպտիկ. երևույթները (***հալո, միրաժ*** ևն):

ՄԹՆՈԼՈՐՏԻ ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄ, մթն–ի սեփ. ԵԿ ճառագայթում (4–120 *մկմ* երկյան սահմաններում): Մ. ճ–ման մեծ մա-

սը (մոտ 70 %) ուղղված է դեպի Երկրի մակերևույթ և կոչվում է մթն–ի հանդիպակաց ճառագայթում, մնացած մասը՝ դեպի տիեզ. տարածություն՝ հեռացող ճառագայթում:

ՄԹՆՈԼՈՐՏԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, օդ. ավազանի սան. պահպանություն, օրենսդր., կազմակերպչ. և սանտեխ. միջոցառումների համալիր: Նպատակը մթն–ի պաշտպ–յունն է վնասակար թափոններից: Մ. ս. պ. ՀՀ–ում կարգավորվում է «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքով (1994):

ՄԺԵԺ (ծ. թ. անհտ–668), հայազգի բյուզանդացի ռազմ. գործիչ: 668–ին *Կոստաս II*–ին սպանած դավադիրները Մ–ին Սիկիլիայում հռչակել են կայսր: Կոստաս II–ի որդի Կոստանդինը (ապագա կայսր Կոստանդին IV) մեծ ուժերով հասել է Սիկիլիա, ձերբակալել Մ–ին և մյուս դավադիրներին ու մահապատժի ենթարկել:

ՄԺԵԺ ԳՆՈՒՆԻ (ծ. թ. անհտ–մոտ 548), Հայաստանի մարզպան՝ մոտ 517–ից: VI դ–ի սկզբներին ջախջախել է Հայաստան ներխուժած հոներին: Նրա օրոք Հայաստանի պարսկ. մասում տիրել է խաղաղություն:

ՄԺԵԺ ԳՆՈՒՆԻ, VII դ–ի հայազգի բյուզանդացի զորավար: 629–ին նշանակվել է կայսրության արլ. շրջանների կառավարիչ: Մասնակցել է կայսր *Հերակլիոսի* դեմ դավադրության ճնշմանը (դավադիրների թվում կային նաև հայ իշխաններ): Մ. Գ–ուն սպանել են հայ զինվորականները՝ իշխան Դավիթ Սահառունու գլխավորությամբ:

ՄԺԵՂՆԵՐ, *մոծակների* ընտանիք: Երկ.՝ 0,5–4 *մմ*: Հայտնի է 1000 տեսակ՝ տարածված լայնորեն: Էգերն արյունածուծ են, հարձակվում են մարդկանց, ընտանի և վայրի կենդանիների վրա: Մարդու և ընտանի կենդանիների մի շարք մակաբույծ որդերի միջանկյալ տերեր են:

ՄԺՂՈՒԿՆԵՐ, **գիշերային մլակներ**, մոծակների ընտանիք: Երկ.՝ 2–4 *մմ*: Հայտնի է 1000 տեսակ: Մի շարք տեսակների էգերը թռչունների և կաթնասունների արյունածուծ են: Թուքն առաջացնում է մաշկի բորբոքում: Մարդու և կենդանիների մի շարք հիվանդությունների (սիբիրյան խոց, տուլարեմիա ևն) հարուցիչների փոխանցողներ են: Մտնում են *զագիտրի* կազմի մեջ:

ՄԺՆԿԵՐՏ, **Մաժանկերտ**, բք Այրարատ նահ–ի *Արեղյանք* գվո–ում: XIII դ–ի սկզբին մտել է Զաքարյանների իշխանապետության մեջ: XVI դ–ի սկզբին գրավել է օսմ. Թուրքիան: Եղել է Էրզրումի նահ–ի գվո–ի կենտրոն: XIX դ–ի սկզբին ուներ 500 տուն հայ բն., որոնք բռնությունների հետևանքով հեռացել են տարբեր վայրեր: 1909–ին ուներ ընդամենը 5 տուն հայ բնակիչ, որոնք զոհվել են 1915–ին:

ՄԻ Գուստավ (Mie Gustav) Ադոլֆ (1868–1957), գերմանացի ֆիզիկոս: Զարգացրել է մանր դիէլեկտրիկ. գնդերից լույսի ցրման տեսություն, ձեռնարկել (1912–13) ամբողջ. տեսություն ստեղծելու փորձ, առաջինն է արտահայտել էլեկտրամագնիս. դաշտի քվանտայնացման գաղափարը:

ՄԻ, եվրոպ. նոտագրության մեջ երաժշտ. 7 հնչյուններից: Հիմն. դիատոնիկ դո մաժոր գամմայի հնչյունաշարի III աստիճանը: Նշվում է լատ. E տառով:

ՄԻԱ ԿՈՈՒՏՈ (Mia Couto, Անտոնիո Էմիլիո Լեյտե Կոուտո, ծ. 1955), մոզամբիկցի գրող: Բրազիլիայի գրկ–յան ակադ–ի թղթ. անդամ (1998): Հեղինակ է «Յուրաքանչյուրն ունի իր ռասան» (1990), «Պատմվածքներ Երկրի ծննդյան մասին» (1997) վիպակների ու պատմվածքների ժող–ների, «Ծովը կանչում է ինձ» (2000) վեպի և այլ գործերի:

Մ. Անտոնիուի (2001), Է. Լոուրենսոյի (2011), Կամոենսի (2013) անվ., Նեյշտադյան գր. (2014) մրց–ներ:

ՄԻԱԲԱՆԱԿԱՆՆԵՐ, **կոնգրեգացիոնականներ**, *կալվինականության* հիմն. ուղղություններից մեկի հետևորդները, որոնք պահանջում են որևէ կրոն. համայնքի (միաբանության) բացարձակ ինքնավարություն: Մ–ին բնորոշ է վարդապետ. կոշտ ձևակերպումներից խուսափումը: Մ. բնակվում են գլխավորապես ԱՄՆ–ում, Մեծ Բրիտանիայում, Աֆրիկայի և Օվկիանիայի որոշ երկրներում: Երբեմն լայն իմաստով համարվում են նաև բողոքականության այլ ճյուղերի (բաբտիստներ, ունիթորականներ ևն) համայնքներ:

ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **ուխտ**, 1. կաթոլիկ եկեղեցու կրոն. կազմ–յուն: Ստեղծվել է XVI դ–ի վերջ–XVII դ–ի սկզբին: Կենսագործում են կաթոլիկ եկեղեցու ծրագրերը: 2. Մի քանի վանքերի միավորում: 3. Հռոմի պապին կից ղեկ. մարմիններ:

Հայաստանում «Մ.» է կոչվել կրոնավորների (անապատականներ) համայն. կյանքը մի վայրում՝ մի վանահոր ղեկավարությամբ: Ծավալել են նաև գիտակրթ. գործունեություն: Հայտնի են Էջմիածնի Մայր աթոռի Մ., Հառիճի ուխտը, *Միխթարյան միաբանությունը*:

ՄԻԱԲՅՈՒՐԵՂ, ողջ ծավալով միասնական բյուրեղ. ցանց և հատկությունների անիզոտրոպություն ունեցող համասեռ բյուրեղ: Արտաքին ներգործությունների (լույս, ջերմություն, ճնշում) ազդեցությամբ Մ–ները կարող են փոխել իրենց հատկությունները, այդ պատճառով դրանցից պատրաստված սարքերը լայնորեն կիրառվում են էլեկտրոնիկայում, հաշվող. տեխնիկայում, ձայնագիտ–յան մեջ:

ՄԻԱԲՆԱԿՆԵՐ, քրիստ. աստվածաբան. ուսմունքի հետևորդներ. ի հակադրություն *երկաբնակների*՝ ընդունում էին Հիսուս Քրիստոսի միայն աստված. բնույթը: Հայաստանյայց եկեղեցին 506–ի Դվինի եկեղեց. ժողովում հաստատել է հավատարմությունը 431–ի Եփեսոսի տիեզ. ժողովի վարդապետությանը, ըստ որի՝ Հիսուս Քրիստոսի մեջ աստվածայինն ու մարդկայինը միավորված են անխառն ու անբաժանելի կերպով:

ՄԻԱԲՋՋԱՎՈՐՆԵՐ, բուս. և կենդ. օրգանիզմներ, որոնց մարմինը կազմված է մեկ բջջից: Ըստ կազմակերպման աստիճանի՝ պատկանում են նախակորիզավորներին՝ *պրոկարիոտներին* (բակտերիաներ) և *էուկարիոտներին* (որոշ ջրիմուռներ, նախակենդանիներ): Կարող են կազմավորել գաղութներ:

ՄԻԱԵԼՋՅՈՒՐ (լատ.՝ Monoseros), համաստեղություն երկնքի հասարական. գոտում՝ *Երկվորյակներ, Մեծ Շուն, Հիդրա, Նավախել* համաստեղությունների միջև: Ամենապայծառ աստղը 3,8 *ա. մ.* է: Հատկապես լավ է երևում ձմռանը:

ՄԻԱՋՆԵՐ (հուն.՝ muia – ճանճ), մարդու և կենդանիների հիվանդություններ. առաջանում են ճանճերի թրթուրների մակաբուծումից: Ճանճերը կարող են ձվերով վարակել սննդամթերքը, ձվադրել մաշկի ախտահարված հատվածներում, մարդու և կենդանիների օրգանիզմների բնական խոռոչներ ներարկել ձվեր պարունակող արտազատուկ: Մ–ի կլինիկ. ախտանշանները բազմազան են և կախված են մակաբույծի տեսակից:

ՄԻԱՄՅԱ ԲՈՒՅՍԵՐ, բույսեր, որոնք կենսացիկլն անցկացնում են մեկ վեգետատիվ շրջանում՝ սովորաբար 2–5 ամսում (կտավատ, կորեկ, հնդկացորեն, գարնանացան ցորեն ևն): Հատկապես արագ աճող Մ. բ. կոչվում են *էֆեմերներ*:

ՄԻԱՆԴԱՄ, արտադրյալ, որը կազմված է թվային գործակցից և դրական ամբողջ ցուցիչով մեկ կամ մի քանի տառերից՝ յուրաքանչյուրը վերցված այս կամ այն աստիճանով (օր.՝ $-3a^2bc^3$, $+0{,}14\,xy$, $+x^3$, $-a$):

ՄԻԱՆՁՆՈՒՀԻ (Lymantriinae), թեփուկաթևավորների ենթաընտանիքի թիթեռ: Հայտնի է մոտ 2700 տեսակ: Բնափայտային ցեղի բույսերի վնասատու է Եվրասիայում: Առջևի թևերը սպիտակ են՝ սև, ատամնավոր գծերով, հետևինները՝ սպիտակագորշ: Մսվում են (թրթուրները) ասեղնա– և այլ տերևներով:

ՄԻԱՆՍԱՐՅԱՆՑ Միքայել Մեսրոպի (1830–1880), հրապարակախոս, հայկ. մատենագիտ–յան հիմնադիրը: Հեղինակ է «Կովկասի և Անդրկովկասի մատենագիտություն» (հ. 1, 1874–76, հայ., ռուս., ֆրանս., գերմ., վրաց. և այլ լեզուներով ներկայացրել է շուրջ 6 հզ. գիրք, հողված, քարտեզ, տպագիր և ձեռագիր նյութեր, գերակշիռ մասը՝ հայագիտ. գրկ.), «Կանոնաւոր եւ վայելուչ գրութեան պատմութիւնը և տեսութիւնը» (1872) աշխ–ների, կազմել է «Քնար հայկական» (1868) երգարանը:

ՄԻԱՆՄԱՐՈՎ Էդուարդ Արսենի (ծ. 1933), դաշնակահար: ՌԴ վաստ. արտիստ (1996): Համերգագանկում՝ Ռ. Շումանի, Ֆ. Շուբերտի, Ֆ. Լիստի, Ֆ. Շոպենի, Յ. Բրամսի, Ա. Ն. Սկրյաբինի, Ս. Ս. Պրոկոֆևի, Դ. Դ. Շոստակովիչի, Ա. Խաչատրյանի, Ա. Բաբաջանյանի և ուր. երկերից: Երաժիշտ–կատարողների միջազգ. մրցույթի դափնեկիր (1958, Մոսկվա):

ՄԻԱՆՁՔԱՆԻՆԵՐ, **ձվադրողներ**, նախագազանների ենթադասի միակ կարգը: Պահպանել են սողուններից ժառանգած մի շարք հնամենի առանձնահատկություններ (ձվադրում են): Կաթնագեղձերը պարզունակ են, համանման ճարպագեղձերին: Աղիները, սեռ. ծորանները և միզապարկը բացվում են կոյանցքի մեջ: Հայտնի է 2 ընտանիք (եքիդնաներ և բադակտուցներ)՝ 3 տեսակով:

ՄԻԱՇԱՔԱՐՆԵՐ, պարզ ածխաջրեր. պարունակում են հիդրօքսիլ և պլեհիդ. (պլդոզներ) կամ կետոն. (կետոզներ) խմբեր: Ըստ ածխածնի ատոմների թվի՝ տարբերում են տրիոզներ, տետրոզներ, պենտոզներ ևն: Կենդանի օրգանիզմներում ազատ վիճակում (բացի խաղողաշաքարից և մրգաշաքարից) հազվադեպ են հանդիպում: Բարդ ածխաջրերի (գլիկոզիդներ, օլիգո– և բազմաշաքարներ) բաղադրության մեջ գոյություն ունեն բոլոր կենդանի բջիջներում:

ՄԻԱՇՈՒՔԻԼԱՎՈՐՆԵՐ (Monocotyledones), ծածկասերմ բույսերի դաս: Բնորոշվում է միաշաքիլ սաղմով (այստեղից էլ՝ Մ. անվանումը): Ի տարբերություն *երկշաքիլավորների*՝ փոխադրող խրձերը դասավորված են անկանոն, փակ են, զուրկ են կամբիումից, որի հետևանքով ցողունն

ու արմատը հիմնականում հաստությամբ չեն աճում, տերևները սովորաբար զուգահեռ կամ աղեղնային ջղավորությամբ են, ծաղիկը մեծ մասամբ եռանդամ է: Մ են հացազգիները, արմավենիները, խոլորձազգիները ևն: Ընդգրկում են 80 ընտանիք և մոտ 60 հզ. տեսակներ:

ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, **մոնարխիա** (< *մոնո...* և հուն.՝ arche – կառավարում), պետ. կառավարման ձև, երբ երկրի գերագույն իշխանությունը լրիվ կամ մասնակիորեն տնօրինում է նրա միանձնյա գլուխը՝ միապետը (թագավոր, կայսր, սուլթան, շահ, ցար ևն): Լինում է բացարձակ և սահմանադր.: Մ–ներ են եղել հայկ. բոլոր թագավորությունները:

ՄԻԱՊՏՂԱԲԵՐ ԲՈՒՅՍԵՐ, **մոնոկարպ բույսեր**, ծաղկում և պտղաբերում են միայն մեկ անգամ, որից հետո սովորաբար չորանում են: Մ. բ. են բոլոր միամյա և երկամյա բույսերը, իսկ բազմամյաներից՝ բամբակենու, ագավայի, արմավենու որոշ տեսակներ ևն:

ՄԻԱՍԵՌ ԺԱՅՌԱՅԻՆ ՄՈՂԵՍ (Darevskia unisexualis), **սպիտակափոր ժայռային մողես, միասեռ դարևսկիա**, իսկական մողեսների ընտանիքի դարևսկիա ցեղի մողես: Կուսածին է: ՀՀ–ում հանդիպում է Շիրակի, Արագածոտնի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում: Ապրում է ժայռոտ, խիստ քարքարոտ, նաև տափաստան. և այլ վայրերում, շինությունների պատերի ճեղքերում: Տափակ մարմնով փոքր մողես է, երկյունը տարիքի հետ փոխվում է (2,5–7 *սմ*), պոչը կրկնակի երկար է, ինքնահատվող: Մնվում է մանր հոդվածոտանիներով և փափկամարմիններով: Խնամվում և բազմացվում է անազատ պայմաններում:

«ՄԻԱՍԻՆ», ազգ., հաս–քաղ. ամսաթերթ (2007–ից, Մինսկ՝ ռուս.): Բելառուսի հայկ. համայնքի «Միասին» ակումբի հրտ–յուն: Խմբ.՝ Միշա Գրիգորյան:

ՄԻԱՄՄԲԱԿԱՎՈՐՆԵՐ (Perissoda etylia), կաթնասունների կարգ: Խոշոր, հազվադեպ՝ միջին մեծության կենդանիներ են: Առջևի վերջույթներն ունեն 1, 3 կամ 4, հետինները՝ 1 կամ 3 մատ: Առավել զարգացած է 3–րդ մատը, որը կրում է մարմնի հիմն. ծանրությունը: Մատների ծայր. ֆալանգները պատված են սմբակներով: Ի տարբերություն երկսմբակավորների՝ Մ–ի ազդրոսկրերն ունեն 3–րդ թմբիկ: Բուսակեր են, ստամոքսը պարզ է, միախցիկ: Ժամանակակից Մ–ի կարգն ընդգրկում է *ձիազգիներին*, *ռնգեղջյուրներին*, *գետաձիներին*:

ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ, **մոնոթեիզմ** (< *մոնո...* և հուն.՝ theos – *Աստված*), կրոն. հավատալիքների համակարգ, որի հիմքում միակ Աստծու մասին պատկերացումներն են: Միաստվածային կրոններ են հուդայականությունը, քրիստոնեությունը, մահմեդականությունը:

ՄԻԱՎ, վարակ, տես *ՁԻՄՀ*:

ՄԻԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, հիմն. և ածանցյալ միավորների խմբեր, որոնք կազմվել են հիմն. մեծությունների (երկյուն, զանգված և ժամանակ) համար ընտրված միավորների հիման վրա: Մինչև *միավորների միջազգային համակարգին* անցնելը գործածվել են հետևյալ համակարգերը.

ՄԿԳՎ (MKGS), մետր, կիլոգրամ, վայրկյան, համակարգ, որը կիրառվել է տեխնիկայում.

ՄԿՎԿ (MKSK), մետր, կիլոգրամ, վայրկյան, Կելվին, ջերմ. մեծությունների միավորների համակարգ.

ՄՎԿ (MSK), մետր, վայրկյան, կանդելա, լուս. մեծությունների միավորների համակարգ.

ՄԿՎ (MKS), մետր, կիլոգրամ, վայրկյան, մեխ. և ձայնագիտ. մեծությունների միավորների համակարգ.

ՄԿՎԱ (MKSA), մետր, կիլոգրամ, վայրկյան, ամպեր, էլ. և մագնիս. մեծությունների միավորների համակարգ.

ՍԳՎ (CGS), սանտիմետր, գրամ, վայրկյան, մեխ., էլ., մագնիս. և ձայնագիտ. մեծությունների միավորների համակարգ:

ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ, SI, ՄՄՀ (ֆիզ.), չափման մեծությունների միավորների համակարգ, որն ընդունել է Չափերի և կշիռների 11–րդ գլխ. համաժողովը (1960–ի հոկտ., Փարիզ): Լատ. կրճատ անվանումը՝ SI (ֆրանս.՝ Sicteme International, հայ.՝ ՄՄՀ): Ընդգրկում է 7 հիմն. միավորներ. երկ–յան՝ *մետր*, զանգվածի՝ *կիլոգրամ*, ժամանակի՝ *վայրկյան*, էլ. հոսանքի ուժի՝ *Ամպեր*, ջերմաստիճանի՝ *Կելվին*, լույսի ուժի՝ *կանդելա*, նյութի քանակի՝ *մոլ*: Մնացած բոլոր միավորներն ածանցյալ են. կազմվում են այդ միավորների տարբեր համակցումներով:

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՄԱԿ), միջկառավար. կազմ–յուն. ստեղծվել է միջազգ. անվտանգության և խաղաղության պահպանման, երկրների միջև համագործակցության զարգացման համար: Գործունեության հիմքերը և կառուցվածքը մշակվել են ԵՀՊ–ի տարիներին՝ հակահիտլերյան կոալիցիայի գլխ. երկրների (ԽՍՀՄ, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Ֆրանսիա), ինչպես նաև Չինաստանի մասնակցությամբ: Կանոնադրությունը ստորագրել են 1945–ին՝ 51 պետության ներկայացուցիչները, և այն ուժի մեջ է մտել հոկտ. 21–ին (նշվում է որպես ՄԱԿ–ի օր): 2015–ին ՄԱԿ–ին անդամակցում էր 199 երկիր (այդ թվում՝ ՀՀ–ն՝ 1992–ից): ՄԱԿ–ի գլխ. մարմիններն են Գլխ. ասամբլեան, ԱԽ, Տնտ. և սոցիալ. խորհուրդը, Խնամակալ. խորհուրդը, Միջազգ. դատարանը և Քարտուղարությունը, մասնագիտացված կազմ–յունները: Համաշխ. փոստ. միությունը, Միջազգ. էլեկտրակապի միությունը, Համաշխ. օդերևութաբան., Աշխ–ի, Առողջապ–յան, Քաղաքաց. ավիացիայի միջազգ. կազմ–յունները, ՅՈՒՆԵՍԿՕ–ն, ՅՈՒՆԻՍԵՖ–ը ևն: ՄԱԿ–ի գլխ. քարտուղարներ են եղել Գելդվին Ջեքը (Մեծ Բրիտանիա), Տրյուգվե Հալվդան Լին (Նորվեգիա), Դագ Համարշոլդը (Շվեյցարիա), Ու Տանը (Բիրմա), Կուրտ Վալդհայմը (Ավստրիա), Խավիեր Պերես դե Կուելյարը (Պերու), Բութրոս Բութրոս–Ղալին (Եգիպտոս), Քոֆի Անանը (Գանա), Բան Կի Մունը (Հվ. Կորեա), Անտոնիո Գուտերեշը (Պորտուգալիա, 2017–ից): Գլխ. կենտրոնատեղին՝ Նյու Յորքում: ՄԱԿ–ի պաշտոն. լեզուներն են՝ անգլ., ֆրանս., իսպ., չին., ռուս., Գլխ. ասամբլեայում, ԱԽ–ում, Տնտ. և սոցիալ. խորհրդում՝ նաև արաբ–ը: Խաղաղության Նոբելյան մրց. (2001):

ՄԻԱՏԱՐՆ ԲՈՒՅՍԵՐ, բույսեր, որոնց առէջք. (արական) և վարսանդ. (իգական) ծաղիկները կամ սեռ. բազմացման (ծաղիկներ չունեցող բույսեր) արական և իգական օրգանները միևնույն անհատի վրա են: Մ. բ. են սերմնավոր բույսերի մեծ մասը (օր՝ տխլենին, եգիպտացորենը): Տես նաև *Բազմատուն բույսեր*, *Երկտուն բույսեր*:

ՄԻԱՑՅԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ, կրթամշակութ. կազմ–յուն: Հիմնադրվել է 1881–ին Կ. Պոլսում՝ *«Արարատյան ընկերություն հայոց»*–ի, *«Դպրոցասիրաց–Արևելյան ընկերության»* և *«Կիլիկյան ընկերության»* միավորումով: Կազմակերպիչներ՝ Մ. Փորթուգալյան, Ա. Արփիարյան, Զ. Շիշմանյան, Հ. Թորոսյան, Մ. Չերազ, Հ. Շահնազար, Հ. Յուսուֆյան, Հ. Աատուր և ուր.: Գործունեության սկզբին Արմ. Հայաստանում, Կիլիկիայում, Թուրքիայի հայաբնակ վայրերում հիմնադրել է շուրջ 30 վարժարան և նախակրթարան: Արդուլհամիդյան հալածանքների պատճառով մինչև 1911–ը չի գործել: Գործունեությունը վերսկսելով՝ բացել է ևս 85 վարժարան, այլ հաստատություններ: Գործել է մինչև 1915–ը:

ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՆԴ, բարեգործ. կազմ–յուն, հիմնադրվել է 1989–ին Լոս Անջելեսում՝ Հարութ *Սասունյանի* նախաձեռնությամբ և ԱՄՆ–ում գործող 7 խոշոր հայկ. կազմ–յունների՝ Ամերիկայի հայկ. համագումարի, ՀԲԸՄ–ի, ՀՕՄ–ի, ՀԱԵ ԱՄՆ–ի 2 առաջնորդարանների, Ամերիկայի Հայ ավետարանչ. ընկերակցության և «Լինսի հիմնարկի» միացյալ ջանքերով: Համակարգել և առավել արդյունավետ է դարձրել Սփյուռքի օգնությունը 1988–ի Սպիտակի երկրաշարժից տուժած, ապա շրջափակման մեջ ընկած Հայաստանին: Ներկայում բարեգործ. ծրագրեր է իրականացնում առողջապ., գղտ–յան, կրթ., տեղեկատվ. և այլ բնագավառներում:

ՄԻԱՓՈՐԻ ԼԵՌՆԱՇՂԱԹԱ, Փոքր Կովկասի արտաքին շարում՝ Տավուշի մարզում: Զգվում է Աղստևի հովտից արլ.՝ մինչև Քաշաթաղ լ.: Երկ.՝ 54 *կմ*, առլգն բարձր.՝ 2993 *մ* (Սուրղուզ լ.): Ջրբաժան է Գետիկ և Հախում, Տավուշ, Խնձորուտ գետերի միջև: Հվ. լանջերը ներառված են «Դիլիջան» ազգ. պարկի տարածքի մեջ:

ՄԻԳԱՄՄՆՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, 1. **արտագալակտիկական Մ.**, մեր *Գալակտիկային* նմանվող աստղ. համակարգեր. նույնն են, ինչ *գալակտիկակաները*: 2. **Գալակտիկական Մ.**, միջաստղ. գազի կամ փոշու լուսավոր և մութ ամպեր: Լինում են դիֆուզ., մոլորակաձև, գիսավորաձև, *գերնոր աստղերի* բռնկման մնացորդներից առաջացած և *Վոլֆ–Ռայեի աստղերի* շուրջը գոյացած Մ.:

ՄԻԳԴՈՆԻԱ, պատմ. երկիր Հայոց Միջագետքի հվ–արլ–ում: Տես *Արվաստան*:

ՄԻԳՐԱՑԻԱ, (լատ.՝ migratio, < migro – անցնել, վերաբնակվել), **տեղաշարժ, 1. բնակչության Մ.**, մարդկանց տեղաշարժը՝ մշտ. կամ ժամանակավոր բնակավայրը փոխելու նպատակով: Ընդգրկում է բնակավայրից հեռացողների (արտագաղթ) ու եկողների (ներգաղթ) խմբերը: 2. **կենդանիների Մ.**, կենդանիների տեղաշարժեր՝ տարածման շրջաններում կենսապայմանների փոփոխության կամ զարգացման ցիկլով պայմանավորված: Կարող են կատարվել հորիզոն. (ցամաքում և ջրում) և ուղղաձիգ (լեռներում, հողում, ջրի խորքում, բուսածածկում) ուղղություններով՝ ակտիվ և պասիվ: Տես նաև *Թռչունների չոր*: 3. **Տարրերի Մ.**, երկրակեղևում և Երկրի մակերևույթի վրա քիմ. տարրերի տեղափոխությունը և

վերաբաշխումը երկրաքիմ. տարբեր շարժընթացների ժամանակ: Տեղի է ունենում հալույթներում, ջր. լուծույթներում, գազառաջացման և պինդ ֆազերում:

ՄԻԳՈՒԼԻՆ Վլադիմիր Վասիլևիչ (1911–2002), ռուս ռադիոֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (1992): Աշխ-ները վերաբերում են տատանումների տեսությանը, ռադիոալիքների տարածմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946,1953):

ՄԻԴ (Meade) Ջեյմս Էդուարդ (1907–1995), անգլիացի տնտեսագետ: Աշխ-ները վերաբերում են միջազգ. առևտրի, վճար. հաշվեկշռի տեսության ու միջազգ. արժույթի խնդիրներին:

Նոբելյան մրց. (1997, Բ. *Ոլինի* հետ):

ՄԻԴ (Mead) Ջորջ Հերբերտ (1863–1931), ամերիկացի փիլ., հոգեբան, սոցիոլոգ, սիմվոլիկ ինտերակցիոնիզմի հիմնադիրը: Ըստ Մ-ի՝ մարդկային «ես»-ը ձևավորվում է միջանձնային փոխազդեցության ընթացքում, պայմանավորված է «ուրիշի դերի ընդունման» տարբեր փուլերով և ինքն իր համար օբյեկտ դառնալու ունակության ձեռքբերմամբ:

ՄԻԴԱՍ (Midas), Փռյուգիայի արքա՝ մ. թ. ա. 738–696-ին: Համաձայն հուն. առասպելի՝ Մ. հպումով ամեն ինչ ոսկու վերածելու հատուկ շնորհ է ստացել *Դիոնիսոսից*: Ըստ հնագույն առասպելի՝ անկիրթ և ինքնահավան Մ. Ապոլոնի և Պանի երաժշտ. մրցության ժամանակ առաջնությունը տվել է Պանին (այստեղից՝ «Միդասի դատ»՝ փխր. իմաստով՝ տգետի դատ): Որպես պատիժ Ապոլոնը Մ-ին տվել է ավանակի ականջներ (այստեղից՝ «Միդասի ականջներ» արտահայտությունը):

ՄԻԴԻԱՆԵՐ, երկփեղկանիների դասի փափկամարմինների սեռ: Խեցու երկ.՝ մինչև 20 *սմ*: Հայտնի է 3 տեսակ՝ Հս. և Հվ. կիսագնդերի բարեխառն գոտու ջրերում, մերձափնյա շրջաններում: Որոշ տեղերում առաջացնում են միդիաներ, համատարած ծանծաղուտ: Մ. օգտագործում են սննդի մեջ: Արդյունագործ. և ջր. մշակության օբյեկտ է:

ՄԻԴՈՅԱՆ Ավետիք Ավետիքի (1915–2002), ուրոլոգ: Բժշկ. գիտ. թեկնածու (1969): ՀՀ վաստ. բժիշկ (1963): ՀՀ-ում ուրոլոգիայի հիմնադիրներից: 1960-ին Մ-ի նախաձեռնությամբ Երևանի 3-րդ կլինիկ. հիվանդանոցում բացվել է ուրոլոգ. բաժանմունք, կազմակերպվել «արհեստական երիկամ» լաբորատորիան (1963): ՀՀ-ում առաջինն է կիրառել հեմոդիալիզի մեթոդը, քրոմոցիստոսկոպիան և իզոտոպ. երիկամագրությունը (ռենոգրաֆիա):

ՄԻԵԼԻՆ, միելինային թաղանթ (այսպես կոչված միջուկ. նյարդաթելեր) առաջացնող նյութ: Կազմված է լիպոպրոտեիդներից: Կատարում է մեկուսիչի դեր: Ծ՚ՆՀ առաջանում է շվաննյան բջիջներից, ԿՆՀ-ում՝ նեյրոգլիայի բջիջներից:

ՄԻԵԼԻՍ, տես *Ողնուղեղաբորբ*:

ՄԻԵԼՈԳՐԱՖԻԱ, տես *Ողնուղեղագրություն*:

ՄԻԵԼՈՄԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, *լեյկոզի* ձև՝ առավելապես պլազմատիկ բջիջների, ոսկրերի ախտահարմամբ՝ ինքնաբեր կոտրվածքների հակումով, սպիտակուցային փոխանակության խանգարմամբ, երիկամների ախտահարմամբ:

ՄԻԶԱԲԱԿՏԵՐԻԱՆԵՐ, **ուրոբակտերիաներ**, քայքայում են միզանյութը՝ առաջացնելով ամոնիակ և ածխածնի երկօքսիդ: Օդակյաց են, աճում են ուժեղ հիմն. միջավայրում (pH = 9,5): Ապրում են կեղտաջրերում, հողում, գոմաղբում, մեզի մեջ:

ՄԻԶԱԳՈՅԱՑՈՒՄ, անողնաշարների արտաթորության օրգաններում և ողնաշարավորների երիկամներում մեզի առաջացման կենսընթացը: Վերջիններում երիկամ. կծիկների մազանոթների պատերի միջոցով զտվում է արյան պլազման՝ գոյացնելով այսպես կոչված առաջն. մեզը: Միզային խողովակներով առաջն. մեզն անցնելիս ջրի մեծ մասն ու նրա մեջ լուծված նյութերի մի մասը հետ են ներծծվում արյան մեջ (վերաբսորբցիա), որի արդյունքում գոյանում է այսպես կոչված վերջնական (կոնցենտրացված)՝ օրգանիզմից հեռացող մեզը:

ՄԻԶԱԹԹՈՒ, 2, 6, 8-եռհիդրօքսիպուրին, անգույն բյուրեղ. նյութ է: Շատ կենդանիների և մարդու ազոտ. փոխանակության վերջնանյութ է և առաջանում է քսանտինի ֆերմենտ. օքսիդացման հետևանքով: Նյութափոխանակության որոշ խանգարումների ժամանակ Մ. և նրա թթու աղերը՝ ուրատները, կուտակվում են երիկամներում, միզապարկում՝ առաջացնելով քարեր, պադագրայի դեպքում՝ հոդերում և մկաններում:

ՄԻԶԱՄՈՒԼ ԴԵՂԱՆՅՈՒԹԵՐ, **դիուրետիկներ** (լատ.՝ diuretica, < հուն. diureticos – միզամուղ), օրգանիզմից մեզի հեռացումն արագացնող, հյուսվածքներում և շճային խոռոչներում հեղուկի քանակությունը նվազեցնող միջոցներ: Ուժեղացնում են նատրիումի իոնների հեռացումն օրգանիզմից:

ՄԻԶԱՆՅՈՒԹ, **կարբամիդ**, $(H_2N)_2C=O$, ածխաթթվի երկամիդը: Անգույն, անհոտ բյուրեղ. նյութ է, $t_{հալ.}$՝ 135°C: Լուծվում է ջրում: Մ. մարդու և կաթնասունների մեծամասնության օրգանիզմներում սպիտակուց. փոխանակության վերջնանյութ է: Առաջանում է լյարդում և արտազատվում մեզով: Արդ-յան մեջ Մ. սինթեզում են ամոնիակից և ածխաթթու գազից: Կիրառվում է ***միզանյութ–մրջնալդեհիդային խեժերի***, ներկանյութերի, պարարտանյութերի, քնաբեր դեղանյութերի (բարբիտուրատներ) արտադր-յան, բժշկության մեջ՝ որպես ջրազրկող և միզամուղ միջոց: Մ. արժեքավոր ***ազոտական պարարտանյութ*** է (պարունակում է 46 % ազոտ): Որպես սպիտակուց. փոխարինիչ՝ ավելացվում է կերերին:

ՄԻԶԱՊԱՐԿ, որոշ անողնաշարների, ողնաշարավորների մեծամասնության և մարդու սնամեջ պարկանման միզային օրգան, որտեղ կուտակվում է մեզն օրգանիզմից և պարբերաբար արտահոսում օրգանիզմից: Մարդու Մ. տեղակայված է փոքր կոնքի խոռոչում: Միջին տարողությունը՝ 400–500 *սմ*³: Հաճախակի հիվանդություններից է Մ-ի բորբոքումը (ցիստիտ):

ՄԻԶԱՊԱՐԿԱԴԻՏՈՒՄ, ցիստոսկոպիա (< հուն. kystis – միզապարկ և ...*ակոպիա*), բժշկ. հետազոտման եղանակ. միզապարկի ներքին մակերևույթի դիտումը՝ միզապարկադիտակի (ցիստոսկոպի՝ ձողախողովակի) օպտիկ. և լուսավորող համակարգի օգնությամբ, որը միզուկով մտցնում են ներս:

ՄԻԶԱՊԱՐԿԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ, ցիստիտ (հուն.՝ kystis – միզապարկ), միզապարկի լորձաթաղանթի բորբոք. հիվանդություն, սովորաբար երիկամներից եկող (վայրէջ) կամ միզուկից թափանցող (վերել) վարակի հետևանքով: Ախտանշանները՝ հաճախակի և ցավոտ միզարձակում, մեզի մեջ արյան և թարախի առկայություն:

ՄԻԶԱՍԵՌԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, կենդանիների և մարդու՝ անատոմ. կառուցվածքով և ֆունկցիայով միմյանց հետ կապված արտաթորության ու սեռ. համակարգերի օրգանների ամբողջություն: Միզային օրգաններն արտադրում են մեզ, մյուս օրգանները (փոքր ու մեծ երիկամ. սկահակներ, ավազան, միզածորան) մեզն անցկացնում են միզապարկ, որտեղ այն կուտակվում է, այնուհետև միզուկով հեռանում օրգանիզմից: Սեռ. օրգանները բաժանվում են արականի և իգականի, որոնք իրականացնում են բազմացման ֆունկցիաներ:

ՄԻԶԱՐՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, **ուրեմիա** (< հուն. uron – մեզ և haima – արյուն), օրգանիզմի սուր կամ քրոնիկ. ինքնաթունավորումը՝ պայմանավորված երիկամ. անբավարարությամբ. արյան մեջ ազոտ. փոխանակության թունավոր նյութերի կուտակում (ազոտեմիա), թթվահիմն. հավասարակշռության խանգարում (ացիդոզ) և օսմոտիկ հավասարակշռության խախտում:

ՄԻԶԱՔԱՐԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, տես *Երիկամաքարային հիվանդություն*:

ՄԻԶԵՍ (Mises) Լյուդվիգ ֆոն (1881–1973), հրեա տնտեսագետ, նոր ավստր. դպրոցի առաջնորդներից, ազատականության խոշորագույն տեսաբան: Ռ. *Միզեսի* եղբայրը: 1945-ից՝ ԱՄՆ-ում: Տնտ. ցիկլի վարկադրամ. տեսություններից մեկի հեղինակը: 1920-ական թթ-ին հիմնավորել է «սոցիալիզմի տրամաբանական և գործնական անիրականալիությունը»:

ՄԻԶԵՍ Ռիխարդ (1883–1953), ավստրիացի մաթեմատիկոս և մեխանիկոս: 1939-ից՝ ԱՄՆ-ում: Լ. ֆոն *Միզեսի* եղբայրը: Աշխ-ները վերաբերում են հավանականությունների տեսությանը, աերոմեխանիկային և կիրառ. մեխանիկային:

ՄԻԶԻԿՆԵՐ, բարձրակարգ խեցգետնակերպների կարգ: Մեծ մասի երկ.՝ 0,5–2,5 *սմ*, ստորջրայիններինը՝ մինչև 18 *սմ*: Հայտնի է մոտ 500 տեսակ. ապրում են հիմնականում ծովերում: Զկների կեր են:

ՄԻԶԻՆ Իգոր Ալեքսանդրովիչ (1935–1999), հաշվող. տեխնիկայի բնագավառի գիտնական: Գեն–մայոր: ՌԳԱ ակադ. (1997): Աշխ-ները վերաբերում են ԷՀՄ-ների ցանցերի ստեղծմանը, մեթոդների մշակմանը, տվյալների փոխանակման և հեռուստամշակման համակարգերի ստեղծմանը: Լենինյան մրց. (1980):

ՄԻԶՈՒԿԱԲՈՐԲ, **ուրեթրիտ** (հուն.՝ uretra – միզուկ), միզուկի վարակական (հիմնականում՝ գոնոռեային ևն) բորբոքում: Ախտանշանները՝ ցավեր, այրոց՝ միզարձակման ժամանակ, թարախ. արտադր-յուն:

ՄԻԹՐԱ, արևի աստվածը հին արլ. կրոն-ներում, հնդիրան. գլխ. աստվածություն, մարդկանց միջև խաղաղ և բարյացակամ հարաբերությունների հովանավորը: Հին Հայաստանում Մ. հայտնի է եղել որպես *Միհր* կամ Միհեր (արևի, արդարադատության աստվածը):

ՄԻԹՐԱԼ ԱՐԱՆ, սրտի ռևմատիկ արատ, երկփեղկ փականի անբավարարություն և ձախ նախասիրտ-փորոք. բացվածքի նեղացում:

ՄԻԹՐԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, **միհրականություն**, հնագույն կրոն, որի հիմքում

Միթրայի պաշտամունքն է: Տարածվել է հելլենիստ. աշխարհում և Հռոմ. կայսրությունում I դ–ում:

ՄԻԹՐԱՈՒՍՏԵՑ, Միհրվահիշտ, *Փոքր Հայքի* զորքերի առաջնորդ, ապա՝ թագավոր՝ մ. թ. ա. IV դ–ի վերջին քառորդին: *Գավգամելայի ճակատամարտում* գլխավորել է Փոքր Հայքի զորքը, որը կռվում էր Աքեմենյան բանակի ձախ թևում: Վերջինիս պարտությունից հետո Մ. վերադարձել է հայրենիք և Փոքր Հայքը հռչակել անկախ թագավորություն:

ՄԻԼ Միխայիլ Լեոնտևիչ (1909–1970), ուղղաթիռների ռուս կոնստրուկտոր: Տեխ. գիտ. դ–ր (1950): Սոց. աշխ. հերոս (1966): Մ–ի ղեկավարությամբ ստեղծվել են «Մի» մակնիշի ուղղաթիռներ՝ Մի–1, –6, –10, նաև Վ–12, որոնցով սահմանվել են ավելի քան 60 համաշխ. ռեկորդներ:

Լենինյան (1958), ԽՍՀՄ Պետ. (1968) մրց–ներ:

ՄԻԼԱՆ (Milano), ք. Հս. Իտալիայում՝ Պադանի հարթավայրում: Միլանի Նինգ–ի և Լոմբարդիայի մարզի վարչ., երկրի տնտ. ու մշակութ. խոշորագույն կենտրոն: Բն.՝ 1,2 մլն (2015): Կա միջազգ. օդանավակայան: Տնտ–յան առաջատար ճյուղերն են մեքենաշինությունը, մետաղագործությունը, նավթավերամշակման, քիմ., կաշվի–կոշիկի, պոլիգրաֆ. արդ–յան ճյուղերը: Մ–ում են «Տուրինգ կլուբ Իտալիան» հրտչ–յունը, մոնոպոլիաների վարչություններ, բազմաթիվ բանկեր ու առևտր. բորսաներ, մի շարք ուս. հաստատություններ, Ազգ. գրադարանը, գիտ. հիմնարկներ, «Լա Սկալա» օպեր. թատրոնը ևն:

Մ. հիմնադրվել է մ. թ. ա. V դ–ի վերջին կամ IV դ–ի սկզբին: 1395–1535–ին (ընդմիջումներով)՝ դքսությունների, 1815–59–ին՝ Լոմբարդո–Վենետիկյան թագավորության կենտրոն: Մ. վաղքրիստ. և ռոման. միջնադար. ճարտ–յան կենտրոններից է [Սան Լորենցո (350), Սանտ Ամբրոջո (IX–XII դդ.), գոթ. տաճար (XIV–XIX դդ.), Կաստելլո Սֆորցիսկո դղյակը (1450–ից), Սանտա Մարիա դելլե Գրացիե վանքը (XV դ.), սեղանատունը՝ Լեոնարդո դա Վինչիի «Խորհրդավոր ընթրիք» որմնանկարով (Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է) ևնլ:

ՄԻԼԱՆՈՎ Ստոյկա (ծ. 1945), բուլղար ջութակահարուհի: ԲԺՀ ժող. արտիստ (1978): Սոֆիայի ֆիլհարմոնիայի մենակատարուհի: Դ. Ֆ. Օյստրախի, Գ. Շերինգի, Յ. Մենուհինի հետ հանդես է եկել անսամբլի կազմում: Միջազգ. մրցույթի 2–րդ (Բրյուսել, 1967), 1–ին (Լոնդոն, 1970) մրց–ներ:

ՄԻԼԴՅՈՒ, բույսերի կեղծ ալրացողային հիվանդություններից, խաղողի վազի տարածված հիվանդություն: Ունի ամերիկ. ծագում: Տարածված է խաղողագործ. բոլոր շրջաններում (այդ թվում՝ ՀՀ–ում): Հարուցիչը Plasmopara viticola մակաբույծ սունկն է: Վնասում է խաղողի վազի բոլոր կանաչ օրգանները: Վնասված հյուսվածքները գորշանում և չորանում են:

ՄԻԼԵԹ, ինքնակառավարվող կրոն. համայնք (հուդայականներ, ուղղափառներ, հայ գրիգորյաններ ևն), որոնք պաշտոնապես ընդունվել են Օսմ. կայսրությունում:

ՄԻԼԵԹՅԱՆ ԴՊՐՈՑ, հինհուն. 1–ին բնափիլ. դպրոցը: Ձևավորվել է Միլեթ ք–ում մ. թ. ա. VI դ–ում: Մ. դ–ի ներկայացուցիչները՝ *Թալեսը, Անաքսիմանդրոսը, Անաքսիմենեսը*, աշխարհը բացատրել են հենց իրենով. բնության նախահիմք են համարել որևէ որոշակի նյութ. գոյ (ջուր, ապեյրոն, օդ), իսկ որակ. բազմազանությունը հանգեցրել են այդ նախահիմքի տարբեր դրսևորումներին: Հայ մտածողները Մ. դ–ի ուսմունքին անդրադարձել են V դ–ից՝ շեշտելով նյութ. սուբստանցի մշտ. գոյության մասին դրույթը, որը կրոնա–իդեալիստ. դիրքերից քննադատել են Եղիշեն, Հովհաննես Իմաստասերը, Հովհաննես Երզնկացին, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին և ուր.:

ՄԻԼԵՎ (Milev) Գեո (Գեորգի Միլև Կասաբով, 1895–1925), բուլղար բանաստեղծ: Հայտնի է «Սեպտեմբեր» (1924, հայ.՝ 1930) հերոսառոմանտիկ. պոեմը, որտեղ պատկերել է ժող. վերելքը և 1923–ի Սեպտ. հակաֆաշիստ. ապստամբության ճնշման ողբերգ. դրվագները: Զոհվել է ֆաշիստ. զնդանում:

ՄԻԼԵՐՅԱՆ Եվգենի Ալեքսանդրի (1913–1986), հոգեբան: Հոգեբ. գիտ. դ–ր (1968), պրոֆ. (1969): Հետազոտությունները վերաբերում են աշխ. հոգեբ–յան խնդիրներին:

ՄԻԼԹՈՆ (Milton) Ջոն (1608–1674), անգլիացի բանաստեղծ, հրապարակախոս, քաղ. գործիչ: «Ի պաշտպանություն անգլիացի ժողովրդի» (1650, 1654) 2 պամֆլետում հանդես է եկել որպես անգլ. հանրապետության անկախության ջատագով: Հեղինակ է նաև «Արեոպագիտիկա» (1644) պամֆլետի, «Դրախտ կորուսյալ» (1667, հայ.՝ 1824), «Դրախտ վերադարձյալ» (1671), «Բրիտանիայի պատմությունը» (1670) պոեմների և «Սամսոն մարտիկը» (1671, հայ.՝ «Սամփսոն Ագոնիստես», 1926) ողբերգության:

ՄԻԼԻ... (լատ.՝ mille – հազար), ելակետ. միավորից հազար անգամ փոքր միավորի կազմման նախածանց (օր.՝ *միլիմետր*): Նշանակվում է *մ* (m), օր.՝ 1 *մմ* = 10^{-3} *մ*:

ՄԻԼԻԱՐԴ (ֆրանս.՝ milliard), հազար միլիոն, միավորից և 9 զրոյից կազմված թիվ՝ 1 000 000 000 կամ 10^9:

ՄԻԼԻԿԵՆ (Millikan) Ռոբերտ Էնդրյուս (1868–1953), ամերիկացի ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ պատվ. անդամ (1924): Մեծ ճշտությամբ չափել է էլեկտրոնի լիցքը, փորձով ստուգել լուսաէֆեկտի Ա. *Էյնշտեյնի* քվանտ. տեսությունը և առաջինը որոշել *Պլանկի հաստատունի* թվային արժեքը:

Նորելյան մրց. (1923):

ՄԻԼԻՄԵՏՐ ՋՐԻ ՍՅԱՆ (ֆիզ.), ճնշման արտահամակարգ. միավոր, նշանակումը՝ *մմ ջրի սյան*: 1 *մմ ջրի սյան* = 9,80665 *Պա* = $7{,}3556 \times 10^{-2}$ *մմ սնդ. ս.*:

ՄԻԼԻՄԵՏՐԱԿԱՆ ԱԼԻՔՆԵՐ, 1–10 *մմ* երկ–յան ռադիոալիքներ: Դրանց կարճալիք մասն ուժեղ կլանվում է մթն–ում, բայց ունեն այսպես կոչված թափանցելիության պատուհան (8, 3,3 և 2 *մմ* ալիքի երկ–յան), որն է վերերկրյա կապի և ռադիոտեղորոշման համար: Մ. ա–ով հնարավոր է ստեղծել շատ փոքր ուղղվածության դիագրամով ոչ մեծ ալեցիրներ: Օգտագործում են հիմնականում ռադիոտեղորոշման մեջ:

ՄԻԼԻՈՆ (ֆրանս.՝ million, < լատ. mille – հազար), միավորից և 6 զրոյից կազմված թիվ՝ 1 000 000 կամ 10^6:

ՄԻԼԻՈՆՇՉԻԿՈՎ Միխայիլ Դմիտրևիչ (1913–1973), ռուս ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1962): Սոց. աշխ. հերոս (1967): Աշխ–ները վերաբերում են տուրբուլենտության տեսությանը, ծծանցմանը, կիրառ. գազ. դինամիկային, իզոտոպների բաժանմանը, բարձրջերմաստիճան. միջուկ. ռեակտորներին: ՌԽՖՍՀ ԳԽ նախագահ (1967–ից):

ԽՍՀՄ Պետ. (1951,1954), Լենինյան (1961) մրց–ներ:

ՄԻԼԻՈՏՈՆՅԱՆ Էդվարդ Գևորգի (ծ. 1952), բանաստեղծ, արձակագիր, խմբ.: Աշակույթի վաստ. գործիչ (2012): 1986–2000–ին՝ *«Ծիծեռնակ»* ամսագրի խմբ.: ՀԳՄ նախագահ (2014–ից): Հեղինակ է «Ծաղիկ ծովային» (1984), «Նոր թվարկություն» (1996), «Է» (2013), «Փշրված զարդանախշ» (2015), մանկ. «Զարմանքների տոնավաճառ» (1988) և այլ բանաստեղծությունների, «Արքայադուստր Թարսինեն» (2010) հեքիաթների ժող–ների, «Հայոց արևակենտրոն կնիքը» (2008), «Երազանք ասպետի արշավանքը» (2009) վեպերի, «Ճանապարհորդ գժերը» (2016) վիպակի:

ՀԼԿԵՄ (1982), Մ. Գորկու անվ. (1987, Մոսկվա), ՀԳՄ Ս. Զորյանի անվ. (1987), Տարվա լավագույն մանկ. գրքի (2002), ՀՀ նախագահի (2005), Պետ. (2013) մրց–ներ, Բելառուսի «Ֆրանցիսկ Սկորինա» շքանշան (2015):

ՄԻԼԻՈՍՅԱՆ Իսրայել Նիկոլայի (ծ. 1968), ծանրորդ: ԽՍՀՄ ս. վ. վ.: Վարդան *Միլիտոսյանի* եղբորորդին: Օլիմպ. խաղերի (1992), աշխարհի (1987–89), Եվրոպայի (1988), ԽՍՀՄ ժողդ–ների սպարտակիադայի (1991), ԽՍՀՄ (1988–89), ԱՊՀ (1992) չեմպիոն, ԽՍՀՄ գավաթակիր (1985), օլիմպ. խաղերի արծաթե մեդալակիր (1976):

ՄԻԼԻՈՏՈՍՅԱՆ Վարդան Իշխանի (ծ. 1950), ծանրորդ: ԽՍՀՄ ս. վ. վ., ՀՀ վ. մ. (1989): Իսրայել *Միլիտոսյանի* հորեղբայրը և մարզիչը: Օլիմպ. խաղերի արծաթե մեդալակիր (1976), Եվրոպայի չեմպիոն (1976, 1978), ԽՍՀՄ գավաթակիր (1977–78):

ՄԻԼԼԵՍ (Millais) սըր Ջոն Էվերետ (1829–1896), անգլիացի գեղանկարիչ, գրաֆիկ: «Նախառաֆայելականների ընկերության» (1848) հիմնադիրներից: Հեղինակ է միջնադար., կրոն. և գր. սյուժեներով («Օֆելիա», 1851–52), հազվադեպ՝ ժամանակակից թեմաներով («Վիստ՝ երեքով», 1872) գործերի, դիմանկարների (Ջ. Ռյոսկինի, 1853–54, Ա. Սալիվենի, 1888), գրքի նկարազարդումների (Ա. Թենիսոնի և ուր.):

ՄԻԼԼԵՐ (Miller) Արթուր (1915–2005), ամերիկացի դրամատուրգ: Հեղինակ է սոցիալ. հնչողությամբ ընտանեկան դրամաների («Կոմիվոյաժորի մահը», 1949), էկզիստենցիալիզմով երանգավորված «գաղափարների դրամաների» («Սա պատահել է Վիշիում», 1964, «Վերջին յանկին», 1991, «Կոտրված ապակի», 1994), «Աշխարհի արարումը և այլ բաներ» (1972) կատակերգության, «Ժամանակի հոսքը: Կյանքի պատմություններ» (1987) ինքնակենսագր. գործի:

ՄԻԼԼԵՐ Հենրի (1891–1980), ամերիկացի գրող, նկարիչ: Հեղինակ է «Խեցգետնի արևադարձը» (1934, հայ.՝ 2012), «Այծեղջյուրի արևադարձը» (1939), «Սև գարուն» (1936) վեպերի, որոնք աղմկահարույց են իրենց մտերմիկ–էրոտիկ թեմաներով, նաև հուշերի և այլ գործերի: Մ–ի «Բարեգութ խաչելություն» (1949–60) եռերգությունը բեստսելլեր է:

ՄԻԼԼԵՐ Մերթոն (1923–2000), ամերիկացի տնտեսագետ: Աշխ-ները վերաբերում են ֆին. շուկաների գործառույթների խնդիրներին (պորտֆելային ընտրության տեսություն, կորպորացիաների ֆինանսավորման հարցեր ևն), գներին:

Նոբելյան մրց. (1990, Հ. *Մարկովիցի* և Ու. *Շարպի* հետ):

ՄԻԼԼՈ (Millo) Մատեի (1814–1896), ռումին դերասան, դրամատուրգ: Ռեալիստ. դպրոցի առաջին ռումին դերասանը: Նպաստել է ազգ. դերասան. դպրոցի ձևավորմանը: 1857-ին կազմակերպել է սեփ. թատերախումբ: Խաղացել է վոդևիլներում, ֆարսերում, կոմեդիաներում, իր, նաև Մոլիերի, Վ. Հյուգոյի, Վ. Շեքսպիրի պիեսներում: Հեղինակ է «Նիշկորեսկու» (1849), «Հին զգեստներ, քաղաքական ցնցոտիներ» (1876) և այլ երգիծ. դրամատիկ. գործերի:

ՄԻԼՆ (Milne) Ալեն Ալեքսանդեր (1882–1956), անգլիացի գրող: Հեղինակ է խաղալիք-գազանիկների՝ Վինի Թուխի, Դնչիկի, Կենգույի և Ռուի («Վինի-Թուխը և բոլոր-բոլորը», 1960, հայ.՝ 1972) մասին բանաստեղծությունների ժող-ների և մանկ. գրքերի, նաև «Միստր Պիմն անցնում է կողքով» (1919) և այլ կատակերգությունների, «Կարմիր տան գաղտնիքը» (1922) դետեկտիվ վեպի, «Հիմա արդեն շատ ուշ է» (1939) հուշագրության:

ՄԻԼՆԻԿՈՎ Անդրեյ Անդրեևիչ (1919–2012), ռուս. գեղանկարիչ: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1976): ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի անդամ (1966): Սոց. աշխ. հերոս (1990): Ստեղծել է հնչեղ գույներով, արտահայտիչ, ողբերգ. կոմպոզիցիաներ («Հրաժեշտ», «Իսպանական եռանկար», 1979), բնանկարներ և դիմանկարներ:

ԽՍՀՄ Պետ. (1951, 1977), Լենինյան (1984) մրց-ներ:

ՄԻԼՇՏԵՅՆ (Milstein) Սեզար (1927–2002), արգենտինացի կենսաքիմիկոս: Աշակել է (Գ. *Քյոլերի* հետ) բջջ. հիբրիդների՝ հիբրիդոմների արտազատած մոնոկլոնային հակամարմինների ստացման կենսատեխնոլոգիա:

Նոբելյան մրց. (1984, Գ. Քյոլերի հետ):

ՄԻԼՈՇ (Miłosz) Չեսլավ (1911–2004), լեհ գրող: Գրել է նաև ֆրանս. և անգլ.: 1951-ից՝ վտարանդի: 1930–50-ական թթ-ի բանաստեղծություններում և պոեմներում, «Որտեղ է արևը ծագում և որտեղ մայր մտնում» (1974), «Անծայրածիր երկիր» (1984) բանաստեղծությունների ժող-ներում իմաստավորել է արդիականության աղետալի ազդեցությունը համաշխ. քաղաքակրթության զարգացման վրա: Հեղինակ է նաև «Իշխանության զավթում» (ֆրանս., 1953), «Ստրկացած բանականություն» (1953) վիպակ-առակների, «Մայրցամաքներ» (1958), «Մեր Եվրոպան» (1959), «Անձնական պարտավորություններ» (1972), «Ուլբրո երկիրը» (1977), «Ճանապարհամերձ շնիկը» (1997) էսսեների, «Օրփեոս և Էվրիդիկա» (2002) պոեմի: Թարգմանել է Հին և Նոր կտակարանները, նմուշներ անգլ. և լեհ. պոեզիաներից: Հայ. հրատարակվել է «Բանաստեղծություններ» (2011) ժող-ը:

Նոբելյան մրց. (1980):

ՄԻԼՍ (Mills) Չաոլզ Ռայթ (1916–1962), ամերիկացի սոցիոլոգ և հրապարակախոս: Քննադատել է ժամանակակից ամերիկ. հաս-յան սոցիալ. կառուցվածքը («Իշխող վերնախավը», 1959), ԱՄՆ-ում որոշակի ազդեցություն է թողել «նոր ձախերի» վրա:

ՄԻԼՏԻԱԴԵՍ (մ. թ. ա. մոտ 550–489), աթենացի պետ. գործիչ և զորավար: Մ. թ. ա. մոտ 520–493-ին՝ Թրակիայի Խերսոնեսի տիրակալ: 490-ին ընտրվել է ստրատեգոս և նույն թվականին Մարաթոնի ճակատամարտում հաղթել պարսիկներին:

ՄԻԼՏՈՆՅԱՆ Շուշանիկ (ծ. 1940), տավղահարուհի: 1965-ից՝ Բրյուսելի սիմֆ. նվագախմբի մենակատար: Պրոֆ.: Հյուրախաղերով հանդես է եկել Հայաստանում (1968), Նյու Յորքում մասնակցել հայ մշակույթի փառատոնին (1972):

Թել Ավիվի տավղահարների (1959), Փարիզի ազգ. կոնսերվատորիայի (1962), Շվեյցարիայի (1964), Մարսել Տուռնիեի անվ. (1971) և այլ միջազգ. մրցույթների դափնեկիր:

ՄԻԼՈՒՏԻՆ (Milutin, Ստեֆան Ուրոշ II, 1253–1321), Սերբիայի թագավոր՝ 1282-ից՝ *Նեմանիչների* հարստությունից: Ամրացրել է կենտր. իշխանությունը և զգալիորեն ընդարձակել սերբ. պետության տարածքը:

ՄԻԽԱԼԵՎԻՉ Վլադիմիր Սերգեևիչ (1930–1994), ուկրաինացի մաթեմատիկոս և կիբեռնետիկոս: ՌԳԱ ակադ. (1984): Աշխ-ները վերաբերում են լավագույն վիճակագր. լուծումների տեսությանը, համակարգ. վերլուծությանը, տես. և տնտ. կիբեռնետիկային: ԽՍՀՄ Պետ. մրց. (1981):

ՄԻԽԱԼԿՈՎ Նիկիտա Սերգեևիչ (ծ. 1945), ռուս. դերասան, կինոռեժ.: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1984): Ս. Վ. *Միխալկովի* և Ն. Պ. *Կոնչալովսկայայի* որդին, Ա. Ս. *Կոնչալովսկու* եղբայրը: 1998-ից՝ Ռուսաստանի կինեմատոգրաֆիստների միության վարչության նախագահ: Նկարահանել է «Յուրայինների մեջ օտար, օտարների մեջ յուրային» (1974), «Սիրո ստրկուհին» (1976), «Անավարտ պիես մեխանիկական դաշնամուրի համար» (1977), «Հինգ երեկո» (1979), «Մի քանի օր Ի. Ի. Օբլոմովի կյանքից» (1980), «Սև աչքեր» (1987, իտալ-խորհրդ.), «Արևից հոգնածները» (1994, Օսկար մրց.՝ 1995), «Սիբիրյան սափրիչ» (1998), «12» (2007) և այլ ֆիլմեր: Նկարահանվել է կինոյում («Դաժան ռոմանս», «Կայարան երկուսի համար» ևն, նաև իր մի քանի ֆիլմերում): ՌԴ Պետ. մրց. (1993, 1995, 1999):

ՄԻԽԱԼԿՈՎ Սերգեյ Վլադիմիրովիչ (1913–2009), ռուս գրող: «Ֆիտիլ» կինոամսագրի հիմնադիր-գլխ. խմբ. (1962): ԽՍՀՄ մանկավարժ. ԳԱ ակադ. (1971): ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1967): Սոց. աշխ. հերոս (1973): Ն. Պ. Կոնչալովսկայայի ամուսինը, Ն. Ս. *Միխալկովի* և Ա. Ս. *Կոնչալովսկու* հայրը: Հեղինակ է մանկ. բանաստեղծությունների («Քեռի Ստյոպա», հայ.՝ 1956, «Ինչ կա ձեզ մոտ»), պիեսների («Կարմիր փողկապ», 1946, «Սիրելի տղա», 1971), նաև առակների, կատակերգությունների («Ամեն ինչ կարող են թագավորները…», 1983, «Ինչ գրված է գրչով…», 1984, ևն): ԽՍՀՄ (Գ. Ս. Էլ-Ռեգիստանի հետ, 1943, 2-րդ խմբագրությունը՝ 1977), ՌԴ (2000) օրհներգերի տեքստերի հեղինակ: Հայ. հրատարակվել են «Մանուկների համար» (1949), «Առակներ» (1951), «Քառականջների տոնը» (1975) գործերը:

ԽՍՀՄ Պետ. (1941, 1942, 1950, 1978), Լենինյան (1970) մրց-ներ:

ՄԻԽԱՅԵԼՅԱՆՑ Լյուսյա (Լուսիկ) Միքայելի (ծ. 1938), սրտաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1979), պրոֆ. (1980): Աշակել է էլեկտրասրտագրերի քանակ. վերլուծության մեթոդ, որի շնորհիվ հնարավոր է որոշել ինֆարկտային օջախի մեծությունը և հետևել հարինֆարկտային հատվածներում տեղի ունեցող փոփոխություններին:

ՀՀ թերապևտների ընկ-յան նախագահ (1992–97): ԽՍՀՄ ԳԱ Ս. Պ. Բոտկինի անվ. մեդալ (1985):

ՄԻԽԱՅԻԼ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ Ռոմանով (1596–1645), Ռուսաստանի ցար՝ 1613-ից, առաջինը՝ *Ռոմանովների* հարստությունից: 1619–33-ին կառավարել է հոր՝ պատրիարք Ֆիլարետի (Ֆ. Ն. Ռոմանով) հետ: Մ. Ֆ-ի օրոք կնքվել են *Սյոլբովոյի հաշտությունը* (1617) և *Դևուլինոյի զինադադարը* (1618) Ռեչ Պոսպոլիտայի հետ, սկսվել է Սմոլենսկի անհաջող պատերազմը (1632–34): Շարունակվել է Պովոլժիեի և Սիբիրի յուրացումը:

ՄԻԽԱՆՅԼՈՎ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (1888–1983), ռուս աստղագետ և գեոդեզիստ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1964): Սոց. աշխ. հերոս (1978): Պուլկովյան աստղադիտարանի տնօրեն (1947–64): Աշխ-ները վերաբերում են Երկրի ձևի քարտագրության, խավարումների տեսություններին, Լուսնի մակերևույթի ձևի ուսումնասիրությանը: Փորձնականորեն հաստատել է (1936) Էյնշտեյնի էֆեկտը՝ աստղի լույսի ճառագայթի գրավիտացիոն շեղումն Արեգակի մոտով անցնելիս:

ՄԻԽԱՅԼՈՎ Բորիս Պետրովիչ (ծ. 1944), ռուս հոկեյիստ (տափօղակով հոկեյ): ԽՍՀՄ ս. վ. վ. (1969), Ռուսաստանի վ. մ.: Ձմեռ. օլիմպ. խաղերի (1972–76), աշխարհի, Եվրոպայի, ԽՍՀՄ, բազմակի (1968–81) չեմպիոն: 1993–97, 2000–02-ին՝ Ռուսաստանի տափօղակով հոկեյի հավաքականի գլխ. մարզիչ:

ՄԻԽԱՅԼՈՎ Վիկտոր Նիկիտովիչ (1934–2011), ռուս ֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (1997): ՌԴ ատոմ. էներգիայի նախարար (1992–1998): Աշխ-ները վերաբերում են միջուկ. ֆիզիկային, ջերմամիջուկ. և միջուկ. լիցքերի մշակմանն ու փորձարկմանը, պայթյունների ֆիզիկային, արագընթաց շարժընթացների ախտորոշման համակարգերի ստեղծմանը:

Լենինյան (1967), ԽՍՀՄ (1982), ՌԴ (1997) Պետ. մրց-ներ:

ՄԻԽԱՅԼՈՎՍԿԻ Նիկոլայ Կոստանտինովիչ (1842–1904), ռուս սոցիոլոգ, հրապարակախոս, գրաքննադատ, լիբերալ նարոդնիկության տեսաբան: «Օտեչեստվեննիե զապիսկի», «Ռուսսկոյե բոգատստվո» ամսագրերի խմբ-ներից: 1879-ին հարել է *«Նարոդնայա վոլյա»*-ին: Սոցիոլոգիայի մեջ մշակել է «սուբյեկտիվ մեթոդը»:

ՄԻԽԵԵՎ Սերգեյ Վիկտորովիչ (ծ. 1938), ռուս ավիակոնստրուկտոր: ՌԳԱ թղթ. անդամ (2000): ՌԴ հերոս (1997): Մ-ի ղեկավարությամբ ստեղծվել են տարբեր նշանակության ուղղաթիռներ, այդ թվում՝ Կա-50 «Սև շնաձուկ», Կա-52:

Լենինյան (1982), ԽՍՀՄ Պետ. (1984) մրց-ներ:

ՄԻԽԵԼ (Michel) Հարթմուտ (ծ. 1948), գերմանացի կենսաֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են թաղանթ. սպիտակուցների, այդ թվում՝ բակտերիոռոդոպսինի անջատմանը և բյուրեղացմանը: Հաստատել է (Ի. *Դեյզենհոֆերի* և Ռ. *Հուբերի* հետ) հակազդման կենտրոնի՝ ցիանաբակտերիաների լուսասինթեզի ապարատի հիմն. բաղադրիչի կառուցվածքը:

Նոբելյան մրց. (1988, Ի. Պեյզենհոֆերի և Ռ. Հուբերի հետ):

ՄԻԽԻՆ Նիկոլայ Անդրիանովիչ (1872–1946), ռուս անասնաբույժ, մանրէաբան: Մոսկվայի անասնաբուժ. ինստ-ի առաջին ռեկտորը (1919–ից): Աշխ-ները վերաբերում են բակտերիաբանության և իմունաբանության հարցերին: Հայտնաբերել է խեչ-ների լեպտոսպիրոզի հարուցիչը, մշակել մի շարք վակցինաների և շիճուկների ստացման մեթոդներ:

ՄԻԽՈԵԼՍ (Վովսի) Սոլոմոն Միխայլովիչ (1890–1948), հրեա դերասան, ռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1939): Աշխատել է Մոսկվայի պետ. հրեական թատրոնում (1929–ից՝ գեղ. ղեկ.): Դերերից են՝ Լիր (Վ. Շեքսպիրի «Լիր արքա»), Կաթնավաճառ Տեվյե («Կաթնավաճառ Տեվյե»՝ ըստ Շոլոմ-Ալեյխեմի): Բեմադրել է «Ֆրեյլեխս» (1945) և այլ գործեր: Սպանվել է:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1946):

ՄԻԿԱԴՈ (բառացի՝ բարձր դուռ), Շապոնիայի կայսրերի տիտղոսը:

ՄԻԿԵՆԱՍ (Mikenas) Յուոզաս Յակուբո (1901–1964), լիտվացի քանդ.: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1961): ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի թղթ. անդամ (1954): Մ-ի գործերից են «Հաղթանակ» (1946), Մ. Մելնիկայտեի (1947–55) հուշարձանները:

ԽՍՀՄ (1947), Լիտվ. ԽՍՀ (1966) Պետ. մրց-ներ:

ՄԻԿԵՆՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ (հնագիտ.), *աքայացիների* նյութ. մշակույթի հետքեր: Զևավորվել է մ. թ. ա. XVII–XVI դդ-ում (Պելոպոնես, Կենտր. Հունաստան, Թեսալիա): Ծաղկել է XV–XIII դդ-ում, տարածվել Էգեյան ծովի կղզիներում, Միջերկրականի արլ. ծովափում, Սիցիլիայում, Հվ. Իտալիայում: Անկումն սկսվել է մ. թ. ա. XIII և XII դդ-ի սահմանագծին: Մ. մ-ի հետ է կապված Արևելքի գծագիր գիրը (կրետ. գրատեսակ):

ՄԻԿԼՈՒԽՈ-ՄԱԿԼԱՅ Նիկոլայ Նիկոլաևիչ (1846–1888), ռուս ճանապարհորդ, մարդաբան, ազգագրագետ: 1866–67-ին ճանապարհորդել է Կանարյան կղզիներում և Մարոկկոյում, 1869-ին այցելել է Կարմիր ծովի ափեր: 1870–80-ական թթ-ին ուսումնասիրել է Հվ-արլ. Ասիայի, Ավստրալիայի, Խաղաղ օվկ-ի կղզիների, հատկապես՝ Նոր Գվինեայի բնիկների մարդաբան. և ազգագր. առանձնահատկությունները: Մ-Մ-ի հավաքածուները պահպանվել են Ս. Պետերբուրգի ազգագրության և մարդաբանության թանգարանում:

ՄԻԿՈԲԱԿՏԵՐԻԱՆՆԵՐ (< հուն. mykes – սունկ և *բակտերիաներ*), ճառագայթասնկերի ընտանիք: Յուպիկաձև երիտասարդ բջիջները ճյուղավորվելու ունակ են, անշարժ և օդակյաց: Լայնորեն տարածված են հողում, ջրում: Մասնակցում են բուս. մնացորդների հանքայնացմանը, օքսիդացնում նավթի ածխաջրածինները: Որոշ տեսակներ ազոտասևեռողներ են: Առանձին Մ. ախտածին են, առաջացնում են մարդու (տուբերկուլոզ, բոր), կենդանիների և բույսերի հիվանդություններ:

ՄԻԿՈԶՆԵՐ, տես *Մնակախտեր*:

ՄԻԿՈՅԱՆ Ալեքսեյ Անաստասի (1925–1986), ավիացիայի գեն-լեյտ. (1972): Անաստաս *Միկոյանի* որդին, Սերգո, Ստեփան, Վանո և Վլադիմիր *Միկոյանների* եղբայրը, Ստաս *Նամինի* հայրը: ՀՄՊ-ին մասնակցել է 1943-ից (օդաչու, օդակի հրամ.): Պատերազմից հետո՝ ավիացիոն գնդի, դիվիզիայի, ՋՕ-ների հրամ.: Այնուհետև ծառայել է ՌՕՈՒ գլխ. հրամանատարությունում:

ԽՍՀՄ Կարմիր դրոշի (2), Աշխ. կարմիր դրոշի, ՀՄՊ 1-ին աստիճանի, Կարմիր աստղի (3) շքանշաններ:

ՄԻԿՈՅԱՆ Անաստաս Իվանի (Հովհաննեսի, 1895–1978), խորհրդ. պետ. և կուս. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1943): Արտեմ *Միկոյանի* եղբայրը, Ալեքսեյ, Սերգո, Ստեփան, Վանո և Վլադիմիր *Միկոյանների* հայրը: 1926–46-ին՝ ԽՍՀՄ արտաքին և ներքին առևտրի, մատակարարման, սննդարդ-յան, արտաքին առևտրի ժողկոմ, միաժամանակ, 1937-ից՝ ԽՍՀՄ ԺԿԽ նախագահի տեղակալ: 1942–45-ին՝ ՊՊԿ անդամ: 1955-ից՝ ԽՍՀՄ ՆԽ նախագահի 1-ին տեղակալ, 1964–65-ին՝ ԽՍՀՄ ԳԽ նախագահության նախագահ, 1923–77-ին՝ ԽՄԿԿ ԿԿ անդամ, 1935–66-ին՝ ԽՄԿԿ ԿԿ քաղբյուրոյի (նախագահության) անդամ (թեկնածու՝ 1926-ից): Եղել է Ի. Վ. Ստալինի մերձավորագույն քաղ. շրջապատում: 1950-ական թթ-ի կեսերին Ն. Ս. *Խրուշչովի* հետ հանդես է եկել Ի. Վ. Ստալինի անձի պաշտամունքի դեմ: 1957-ին պաշտպանել է Ն. Ս. Խրուշչովին՝ հակակուս. խմբի՝ նրան պաշտոնանկ անելու փորձի դեմ: *Կարիբյան ճգնաժամի* (1962) վերացման գործում վճռորոշ դեր է կատարել Մ-ի դիվանագիտ. առաքելությունը:

ՄԻԿՈՅԱՆ Արտեմ Հովհաննեսի (1905–1970), ավիակոնստրուկտոր: Տեխ. գիտ. դ-ր (1959): ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1968), ճարտարագիտատեխ. ծառայության գնդ. (1967): Սոց. աշխ. հերոս (1956,1957): Անաստաս *Միկոյանի* եղբայրը: ԽՍՀՄ-ում ռեակտիվ ավիացիայի հիմնադիրներից:1940–70-ին՝ ինքնաթիռաշինության փորձարար. ԿԲ-ի հիմնադիր-պետ (կոչվել է Մ-ի անունով): Մ-ի ղեկավարությամբ (Մ. Ի. *Գուրևիչի* հետ) ստեղծվել են ՄիԳ-1, ՄիԳ-3 կործանիչները, ԽՍՀՄ առաջին հրթիռակիր ՄիԳ-19, եռանկյունաձև թևով ՄիԳ-21, աշխարհում առաջին փոփոխելի սլաքաձև թևով ՄիԳ-23, աշխարհում առաջին ՄիԳ-25 բարձրաթիռ կալանիչ-կործանիչ ինքնաթիռները: Մ-ի ինքնաթիռներով սահմանվել է 55 համաշխ. ռեկորդ: Կարևոր նշանակություն ունեն Մ-ի թևավոր հրթիռների և հրթիռատիեզ. տեխնիկայի ոլորտների աշխ-ները: ԽՍՀՄ Պետ. (1941, 1947, 1948, 1949, 1952, 1953), Լենինյան (1962) մրց-ներ: ԽՍՀՄ ԳԽ պատգմ. (1950–70): Սանահինում գործում է Միկոյան եղբայրների տուն-թանգարան (1971-ից):

ՄԻԿՈՅԱՆ Սանվել Ադամի (ծ. 1961), բանաստեղծ, խմբ., լրագրող: 1997-ից՝ *«Երկունք»,* 1998-ից, միաժամանակ՝ *«Լոռու մարզ»* պարբ-ների գլխ. խմբ.: Հեղինակ է «Շարունակվող մղձավանջ» (1991), «Անդրադարձներ» (2001), «Որտե՞ղ են երաժիշտները» (2011), «Անդունդի եզրով քայլողը» (2014) բանաստեղծություններ-ի ժող-ների: ՀԳՄ Ս. Սիմոնյանի անվ. (1988), Ա. Իսահակյանի անվ. (2014), ՀԺՄ «Ազդարար» (2009) մրց-ներ:

ՄԻԿՈՅԱՆ Սերգո (Սերգեյ) Անաստասի (1929–2010), պատմաբան-միջազգայնագետ: Անաստաս *Միկոյանի* որդին, Ալեքսեյ, Ստեփան, Վանո և Վլադիմիր *Միկոյանների* եղբայրը: Աշխ-ները վերաբերում են Ասիայի և Լատ. Ամերիկայի ժողդ-ների ազատագր. շարժումներին ու միջազգ. հարաբերություններին, Ա. Ի. Միկոյանի դիվանագիտ. առաքելությանը՝ ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև ծագած *Կարիբյան ճգնաժամի* (1962) վերացման գործում և այլ խնդիրների: Մասնակցել է «Միջազգային հարաբերությունները երկրորդ համաշխարհային պատերազմից հետո» (ռուս., հ. 1–3, 1963–65), «Տնտեսական զարգացման դիվանագիտություն» (ռուս., 1969) աշխ-ների հրտ-յանը: Պերուի Հանրապետության «Կոմանդոր» շքանշան:

ՄԻԿՈՅԱՆ Ստեփան Անաստասի (1922–2017), ԽՍՀՄ վաստ. փորձարկող օդաչու (1963), ավիացիայի գեն-լեյտ. (1980): ԽՄ հերոս (1975): Տեխ. գիտ. թեկնածու (1979): Անաստաս *Միկոյանի* որդին, Ալեքսեյ, Սերգո, Վանո և Վլադիմիր *Միկոյանների* եղբայրը: Մասնակցել է ՀՄՊ-ին՝ որպես ավագ օդաչու, օդակի հրամ.: Եղել է ռազմ. փորձարկող, ապա՝ կործանիչ ինքնաթիռների ավագ փորձարկող օդաչու: Ընդհ. թռիչքաժամը՝ մոտ 3500 *ժ*: Թռել է Լա-102 տիպի ինքնաթիռներով և դրանց վերափոխված տեսակներով, փորձարկել Ա. Ի. Միկոյանի, Պ. Օ. Սուխոյի, Ա. Ս. Յակովլևի և ուր. ՀԿԲ-ների մարտ. ինքնաթիռները: Մասնակցել է «Բուրան» տիեզերանավի ստեղծմանն ու փորձարկմանը (ղեկավարել է հրթիռակրի վայրէջքը):1959–65-ին՝ ՌՕՈՒ գիտափորձարար. ինստ-ի վարչության պետ, 1965–78-ին՝ ինստ-ի պետի տեղակալ: Հեղինակ է «Ռազմական փորձարկող օդաչուի հուշերը» (ռուս., 2002) երկի:

Լենինի (1972), Կարմիր աստղի (1942), ՀՄՊ 1-ին աստիճանի և այլ շքանշաններ: ԱՄՆ փորձարկող օդաչուների ընկերակցության պատվ. անդամ (1987):

ՄԻԿՈՅԱՆ Վանո Անաստասի (1927–2016), ավիակոնստրուկտոր: Անաստաս *Միկոյանի* որդին, Ալեքսեյ, Սերգո, Ստեփան և Վլադիմիր *Միկոյանների* եղբայրը: Ղեկավարել է ՄիԳ-21, ՄիԳ-23, ՄիԳ-29 ճակատ. կործանիչների ստեղծման և փորձարկման աշխ-ները:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1981, 1988), Հոկտ. հեղ-յան (1974), «Պատվո նշան» (1965), ՌԴ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 4-րդ աստիճանի (1999) շքանշաններ:

ՄԻԿՈՅԱՆ Վլադիմիր Անաստասի (1924–1942), խորհրդ. օդաչու, ավիացիայի լեյտ.: Անաստաս *Միկոյանի* որդին, Ալեքսեյ, Սերգո, Ստեփան, Վանո *Միկոյանների* եղբայրը: ՀՄՊ-ի ժամանակ ծառայել է Դոնի ռազմաճակատում, զոհվել է մարտ. թռիչքի ժամանակ:

ԽՍՀՄ Կարմիր դրոշի շքանշան (1942, հետմահու):

ՄԻԿՈՊԼԱԶՄՆԵՐ, բակտերիաների դաս, որոնք զուրկ են բջջ. պատից և սահմանազատված են պլազմ. թաղանթով: Անշարժ են: Սապրոֆիտ են կամ մակաբույծ: Ախտածին Մ. առաջացնում են մարդու և կենդանիների (օր.՝ խեչ-ի) թոքերի բորբոքում և բույսերի հիվանդություններ:

ՄԻԿՈՊԼԱԶՄՈԶՆԵՐ, մարդու և կենդանիների վարակիչ հիվանդություն. հարուցիչները *միկոպլազմներն* են: Վարակի աղբյուրը մարդն է, վարակը փոխանցվում է օդակաթիլ. և սեռ. ճանապարհներով: Ընթանում է քթաբորբի, ըմպանաբորբի, կոկորդաբորբի, բրոնխաբորբի, թոքաբորբի ձևերով (ախտանշաններն են օրգանիզմի արտահայտված ինքնաթունավորումը, բարձր ջերմաստիճանը), նաև որպես միզասեռ. համակարգի քրոնիկ. ախտահարում՝ սակավաթիվ ախտանշաններով: Բուժումը՝ հակաբիոտիկներով:

ՄԻԿՈՌԻԶ (< հուն. mykes – սունկ և riza – արմատ), **սնկարմատ**, սնկամարմնի և բարձրակարգ բույսերի արմատի (օր.՝ կաղամախասունկը՝ կաղամախու, կնջասունկը՝ կեչու) փոխշահավետ համակեցությունը: Անտառատնկումների ժամանակ խորհուրդ է տրվում կատարել հողի միկոռիզացում:

ՄԻԿՈՏՈՔՍԻԿՈԶՆԵՐ, տես *Մնակախտեր*:

ՄԻԿՈՏՐՈՖ ԲՈՒՅՍԵՐ (< հուն. mykes – սունկ և trophe – սնունդ), բույսեր, որոնք ունեն սնկամարմին (միկոռիզ) և սննդանյութերը վերցնում են հողից՝ սնկամարմնի հետ համակեցությամբ կապված սնկերի հիֆերի օգնությամբ (խոլորձազգիներ, բազմաթիվ ծառեր, թփեր ևն):

ՄԻԿՈՖԻԼ ՄՆԿԵՐ, տարասեռ էկոլոգ. խումբ. ընդգրկում է սնկերի կարգաբան., սննդ. տիպերի տարբեր տեսակներ: Հայտնի է մոտ 2 հզ. տեսակ, ՀՀ-ում՝ մոտ 45, որոնք պատկանում են զիգոմիցետների, ասկոմիցետների, *բազիդիավոր սնկերի* և *անկատար սնկերի* դասերին: Համարվում են կենսբ. ակտիվ նյութերի ստացման հեռանկար. աղբյուր. դրանցից անջատվել են մի շարք հակաբիոտիկներ: Շատ տեսակներ բնության մեջ մի շարք բուսախտածին սնկերի բնական մակաբույծներ են, ուստի կարող են օգտագործվել հարուցիչների դեմ՝ որպես կենսբ. պայքարի միջոց: Մ. ս. մեծ վնաս են հասցնում սնկաբուծությանը՝ հարուցելով տարբեր հիվանդություններ:

ՄԻԿՈՖՈՖԱՆՄԱՆՆԵՐ, ոսկրային ձկների կարգ. նման են ծովատառեխներին: Երկ.՝ 2,5 *սմ*–2 *մ*, կ. զ.՝ մի քանի *գ*–ից մինչև 5 *կգ*: Հայտնի է 400 տեսակ՝ բոլոր օվկ-ների, առավելապես՝ խորջրյա, արևադարձ. և բարեխառն տաք ջրերում:

ՄԻԿՐՈ... (հուն.՝ micro – փոքր), 1. բարդ բառերի բաղադրամաս. ցույց է տալիս որևէ բանի փոքր չափերը (օր.՝ *միկրոկլիմա*): 2. Ելակետային միավորից մլն անգամ փոքր միավորի անվանումը կազմելու համար գործածվող նախածանց: Կրճատ նշանակվում է մկ (միջազգ. նշանակումը՝ μ):

ՄԻԿՐՈԱԼԻՔԱՅԻՆ ՎԱՌԱՐԱՆ, տաքացուցիչ սարք, որում ջերմամշակվող օբյեկտը տաքանում է ԳԲՀ գեներատորի էլեկտրամագնիս. ճառագայթման էներգիայի հաշվին: Օգտագործում են արդ. պատրաստվածքների, նյութերի և կիսաֆաբրիկատների արագ տաքացման, կերակրի պատրաստման համար:

ՄԻԿՐՈԱԼԻՔՆԵՐ, միլիմետր., սանտիմետր. և դեցիմետր. ընդգրկույթի ռադիոալիքների ընդհ. անվանումը:

ՄԻԿՐՈԲԻՈՒՐԵՂԱԴԻՏՈՒՄ, միկրոքիմ. վերլուծության եղանակ, առարկայական ապակու վրա վերլուծվող լուծույթի կաթիլի (մինչև 10^{-3} *մլ*) վրա ռեագենտների ազդեցությամբ առաջացող բյուրեղ. նստվածքների մանրադիտում (60 և ավելի անգամ մեծացրած): Բաղադրությունը որոշում են բյուրեղների ձևով, գույնով և չափով:

ՄԻԿՐՈԷԼԵԿՏՐԱՖԻԶԻՈԼՈԳԻԱ, ֆիզիոլոգիայի բաժին. ուսումնասիրում է կենդանի օրգանիզմի առանձին բջիջներում ու թելիկներում տեղի ունեցող էլ. երևույթները:

ՄԻԿՐՈԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ, *էլեկտրոնիկայի* ուղղություն, որն ապահովում է էլեկտրոն. սարքերի և սարքավորումների գերփոքրաչափությունը՝ մեծաթիվ տրանզիստորների և այլ էլեկտրոն. բաղադրիչների ինտեգրումով մեկ բյուրեղի (չիփ) վրա կամ մեկ պատյանում, ինչը հանգեցնում է էլեկտրոն. սարքավորումների (այդ թվում՝ հաշվող. տեխնիկայի, տեղեկութ. և հեռահաղորդակց. համակարգերի սարքերի) զանգվածի չափերի փոքրացմանը և էլեկտրոն. սարքավորումների արագագործության ու հուսալիության բարձրացմանը: Ձևավորվել է 1960-ական թթ-ի սկզբին: Մ-ի տարրերի հիմքն ինտեգրալ սխեմաներն (ԻՍ) են, որոնք ստեղծվում են կիսահաղորդչ. (սովորաբար՝ սիլիկատ.) թիթեղի վրա: Նույն թիթեղի վրա տեղակայվում են նույնատիպ ԻՍ-ներ, որոնք պատրաստվում են միաժամանակ՝ միասն. տեխնոլոգ. շարժընթացով: Մ-ի տեխնոլոգիայի զարգացմանը զուգընթաց աճում է սիլիկատ. ԻՍ-ների բարդությունը. 2010-ին մեկ ԻՍ պրոցեսորի տարրերի թիվը 10^9 էր, իսկ փոքրագույն չափերը՝ 100 *նմ* և ավելի փոքր, միաժամանակ մեծանում է թիթեղների տրամագիծը (1960-ի 75 *մմ*-ից մինչև 2010-ի 300 *մմ* և ավելի), որոնց վրա տեղակայվում են մեծաթիվ ԻՍ-ներ: Տրանզիստորների չափերի փոքրացման շնորհիվ ԻՍ-ների արագագործությունը սկսած 1960-ից աճել է ավելի քան 10^4 անգամ, իսկ 1 տրամաբ. տարրի 1 միացման (կամ անջատման) համար ծախսված էներգիան նվազել է ավելի քան 6 կարգով:

ՄԻԿՐՈԷԿՈՆՈՄԻԿԱ, տնտեսագիտ-յան բաժին. ուսումնասիրում է տնտ. սուբյեկտների, գլխավորապես՝ ապրանքներ ու ծառայություններ արտադրող ու սպառող ձեռն-ների ու ֆիրմաների տնտ. գործունեությունը: Հիմն. բաժիններն են՝ սպառման տեսությունը, ֆիրմայի ու շուկայական կառուցվածքի տեսությունը, մենաշնորհին ու մրցակցությունը, պետ. ու մասնավոր հատվածները, աշխ-ի շուկան, եկամուտների բաշխումը ևն:

ՄԻԿՐՈԷԹԱՎԻԿՆԵՐ, մարդու և կենդանիների էպիթել. բջիջների պլազմային թաղանթի բազմաթիվ մանրադիտակ. մակաձևեր: Երկ.՝ 500–3000 *նմ*, տրամագիծը՝ 50–100 *նմ*: Մեծացնում են բջջ. մակերևույթը:

ՄԻԿՐՈԼԻԹ, տանտալինիոբատային խմբի միներալ ($Ca, Na)_2 Ta_2O_6 (OH,F)$, մինչև 1–4 % H_2O-ով: Խառնուրդներն են՝ U, Bi, Nb: Գորշ և այլ գույների բյուրեղներ են, հատիկներ և ագրեգատներ: Կարծր.՝ 4,3–5,7, խտ.՝ 5,9–6,4 $գ/սմ^3$: Հանդիպում է հիմնականում հազվագյուտ մետաղների գրանիտ. պեգմատիտներում:

ՄԻԿՐՈԿԱՌՈՒՑՎԱԾՔ նյութ, նյութի (մետաղներ, համաձուլվածքներ, խեցեղեն, բետոն) կառուցվածք, որը տեսանելի է մանրադիտակի (օպտիկ. կամ էլեկտրոն.) օգնությամբ: Մ-ի միանման կառուցվածքով մասերը կոչվում են կառուցվածք. բաղադրիչներ: Մ-ի բնույթը (բյուրեղների չափեր, ձևեր և փոխադարձ դասավորություն) մեծ չափով ազդում է նյութի հատկությունների վրա:

ՄԻԿՐՈԿԼԻՄԱ, 1. օդի գետնամերձ փոքր տեղամասի կլիմա: Զգալիորեն փոխվում է հիմնականում փոքր տարածություններ-ի (հարյուրավոր կամ նույնիսկ տասնյակ մետրերի) վրա՝ կախված ներգործող շերտի (օր.՝ անտառի առանձին բացատների, պուրակների, փոքրիկ ջրամբարների, բլուրների ևն) հատկություններից: Գործն. նշանակություն ունի գղտ-յան և քաղաքաշինության համար: 2. Փակ շինություններում (տներ, ջերմոցներ ևն) ստեղծվող կլիմա՝ արտաքին անբարենպաստ ներգործությունից պաշտպանվելու և հարմարավետություն ստեղծելու համար:

ՄԻԿՐՈԿՈՂԵՐ, գնդաձև բակտերիաների սեռ: Ապրում են ջրում, օդում: Մեծամասնությունը սապրոֆիտ է, որոշ տեսակներ առաջացնում են թարախ. հիվանդություններ:

ՄԻԿՐՈՄԱՄՆԻԿՆԵՐ (ֆիզ.), շատ փոքր զանգվածով մասնիկներ, որոնցից են *տարրական մասնիկները*, ատոմի միջուկները, ատոմները, մոլ-ները:

ՄԻԿՐՈՄԵՏՐ, 1. գծային չափերը (ներքին և արտաքին) հսման եղանակով չափող հատուկ մանրաչափ. (շատ ճշգրիտ) պտուտակով հանդերձված չափոցով սարք: 1 բաժանմունքի արժեքը 0,01 *մմ* է, չափման սահմանը՝ մինչև 2000 *մմ*: 2. ՄՄՀ-ում երկ-յան միավորի մաս. հավասար է 10^{-6} *մ*, նշանակվում է *մկմ*, կոչվում է նաև միկրոն:

ՄԻԿՐՈՆԵԶԱՅԻՆԵՐ, ավստրալոնեզ. ժողղ-ների խումբ, Միկրոնեզիայի հիմն. բնակչությունը. Մարիանյան կղզիներում՝ չամորո և կարոլինցիներ, Կարոլինյան կղզիներում՝ պալաու, յապ, ուլիտիանցի, Մարշալյան կղզիներում՝ մարշալցիներ, Գիլբերտի կղզիներում՝ կիրիբատի, Նաուրու կղզիներում՝ նաուրու, ինչպես նաև տրուկ, պոնապե, կոսրաե ժողղ-ներ: Ընդհ. թիվը՝ 380 հզ. (2010): Խոսում են միկրոնեզ. լեզուներով:

ՄԻԿՐՈՆԵԶԻԱ (Micropesia) (< *միկրո...* և հուն.՝ nezia – կղզի), Օվկիանիայի հիմն. կղզեխմբերից Խաղաղ օվկ-ի արմ-ում: Կղզիների ընդհ. թիվը՝ շուրջ 1500 (հիմնականում՝ բուստային ծագման): Տարածքը՝ 2,6 հզ. $կմ^2$: Ներառում է Մարիանյան, Կարոլինյան, Մարշալյան, Գիլբերտի կղզեխմբերը, Բաբանա, Նաուրու և որոշ այլ կղզիներ: Տարածված են մշտադալար անտառները, հազվադեպ՝ սավաննաներ: Կա արևադարձ. երկրագործություն:

ՄԻԿՐՈՆԵԶԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՆԱՀԱՆԳՆԵՐ (ՄԴՆ, Federated States of Mikronesia), պետություն Խաղաղ օվկ-ում՝ Օվկիանիայի *Միկրոնեզիա* կղզեխմբում: Տարածքը՝ 702 $կմ^2$, բն.՝ 106,1 հզ. (2013): Մայրաքաղաքը՝ *Պալիկիր* (Պոնապեի կղզում): Պետ. լեզուն՝ անգլ.: Կառավարման ձևը՝ խորհրդարանահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ Ազգ. կոնգրեսը: Հավատացյալների մեծ մասը քրիստոնյա է (կաթոլիկ և բողոքական): Բաժանված է 4 վարչ. նինգ-ների: Անդամակցում է ՄԱԿ-ին: Ադքատ երկիր է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 2,2 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է պարեն, ձուկ, հագուստ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ, դեղորայք ևն: Դրամ. միավորը՝ ԱՄՆ դոլար:

ՄԴՆ տարածքը XVII–XIX դդ-ում պատկանել է Իսպանիային: 1889-ին Գերմանիան Իսպանիայից գնել է Կարոլինյան կղզիները: 1914-ին գրավել է Ճապոնիան, ԵՀՊ-ի ժամանակ՝ ԱՄՆ-ն, որը ՄԱԿ-ի մանդատով կառավարել է կղզիները Խաղաղօվկիանոս. խնամակալ. կղզի-ների կազմում: 1978-ին Կարոլինյան կղզիներն ստացել են ԱՄՆ-ին «ազատ ասոցացված» տարածքի կարգավիճակ (համաձայնագիրն ստորագրվել է 1982-ին): 1986-ից անկախ պետություն է (ԱՄՆ-ին «ազատ ասոցացված» երկրի

կարգավիճակով): 1991–ից ԱՄՆ–ի խնամակալությունը դադարեցվել է:

ՄԻԿՐՈՆԵԶՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, ավստրոնեզիական լեզվաընտանիքի լեզվախումբ: Ներառում է Մարշալյան, Կարոլինյան, Մարիանյան և Գիլբերտի կղզիների ցեղերի լեզուները:

ՄԻԿՐՈՊԱՏՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ, կանխադրույթ, ըստ որի՝ *պատճառականության սկզբունքը* կատարվում է ընդհուպ մինչև հնարավոր փոքր հեռ–յունների և ժամանակահատվածի համար. փորձով հաստատված է մինչև $\geq 10^{-16}$ *սմ* հեռ–յունների և $\geq 10^{-26}$ *վ* ժամանակի համար:

ՄԻԿՐՈՊԱԲԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ, բույսերի համար մատչելի ձևով *միկրոտարրեր* պարունակող պարարտանյութեր: Ստորաբաժանվում են 2 խմբի՝ միա– (միայն բոր, պղինձ, ցինկ, մանգան, մոլիբդեն ևն պարունակող) և բազմա– (պարունակում են 2 և ավելի միկրոտարրեր) Մ.: Որպես Մ.՝ օգտագործում են միկրոտարրերի աղերը, արդ. թափոնները (խարամ, շլակ ևն), խելատները (օրգ. նյութերի և մետաղների միացությունները) ևն: Մ. օգտագործում են բույսերի սննդառության խանգարումների և հողում համապատասխան միկրոտարրերի անբավարարության դեպքերում: Բարելավում են բերքի որակը, բարձրացնում բերքատվությունը, արագացնում հասունացումը, ավելացնում շաքարի, վիտամինների, յուղերի պարունակությունը պտուղներում և սերմերում, կանխում բույսերի հիվանդությունները, բարձրացնում ցրտաչորադիմացկունությունը ևն:

ՄԻԿՐՈՊԻԼԵ (< *միկրո...* և հուն.՝ pyle – դարպաս, անցք), 1. միջատների, սարդակերպների, որոշ փափկամարմինների, ձկների և այլ կենդանիների ձվաթաղանթում մեկ կամ մի քանի անցքեր, որոնցով սերմնաբջիջները թափանցում են ձվի մեջ: 2. Փոշեմուտք, բարձրակարգ սերմնավոր բույսերի սերմնաբողբոջների գագաթն. անցք, որով փոշոտման ժամանակ ներս է մտնում փոշեխողովակը:

ՄԻԿՐՈՊՐՈՑԵՍՈՐ, ինտեգրալ սխեմա (ԻՍ), որը կատարում է համակարգչի կենտր. պրոցեսորի (ԿՊ) գործառույթները: Ժամանակակից կիսահաղորդչ. տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս 1 սիլիկատ. միաբյուրեղի (չիփի) վրա ստեղծել մեծ թվով տրանզիստորներ: 1 ԻՍ–ի վրա ԿՊ–ի իրականացումն ունի մի շարք առավելություններ՝ մեծ հուսալիություն, փոքր ինքնարժեք, գործարկման փոքր հզորություն, մեծ արագություն:

ՄԻԿՐՈՍԿՈՊԻԿ ՎԻՃԱԿ, միկրովիճակ համակարգի, դաս. մեխանիկայում որոշվում է համակարգի բոլոր մասնիկների կոօրդինատներով և իմպուլսներով: Քվանտ. մեխանիկայում Մ. վ. համակարգի քվանտ. վիճակն է, որը որոշվում է մասնիկների համապատասխան քվանտ. թվերի լրակազմով:

ՄԻԿՐՈՍՊՈՐ, բարձրակարգ տարասպոր բույսերի մանր սպոր, որից առաջանում է արական գամետոֆիտը: Բարձրակարգ սպորավոր բույսերում (ջր. պտերներ, սպորավորներ, սելագինելները) Մ–ից զարգանում է արական նախածիլը: Սերմնավոր բույսերում Մ–ին համանման է փոշեհատիկը (փոշանոթը):

ՄԻԿՐՈՍՊՈՐԻԱ, խուզող մրմնջուկ, մկնատամ, մարդկանց և կենդանիների սնկային հիվանդություն: Բնորոշ է մաշկի վրա խիստ սահմանազատված մազազուրկ հատվածների բշտ. ախտահարմամբ: Մաշկի ախտահարված հատվածներում առաջանում են բշտեր, մազերը թափվում են, գլխի մազածածկ հատվածում առաջանում են թեփուկներով ծածկված վարդագույն բծեր ևն: Մարդը վարակվում է հիվանդներից կամ կենդանիներից (շուն, կատու):

ՄԻԿՐՈՍՊՈՐԻԴԻԱՆԵՐ, նախակենդանիների դաս (տիպ): Կենդանիների (հիմնականում՝ հոդվածոտանիների) ներքջջ. մակաբույծներ են: Սպորները ձվաձև են, երկ.՝ մինչև 2–10 *մկմ*: Հայտնի է ավելի քան 300 տեսակ: Որոշ Մ. (օր.՝ նոզեմները) առաջացնում են ձկների, մեղուների, մետաքսագործների հիվանդություններ: Օգտագործում են վնասակար հոդվածոտանիների դեմ կենսբ. պայքարում:

ՄԻԿՐՈՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, ոչ մեծ չափերի անատոմ. գոյացությունների (ակնախնձոր, միջին ականջի կառուցվածքներ, անոթներ, նյարդեր ևն) *վիրաբուժության* տեսակ. կատարվում է վիրահատ. հատուկ մանրադիտակներով, գործիքներով (միկրովիրադանակներ, մկրատներ ևն) և կարանյութերով (մետաղավորած թելեր, անվնաս ասեղներ):

ՄԻԿՐՈՏԱՐՐԵՐ, քիմ. տարրեր (Al, Fe, Cu, Mn, Zn, Mo, Co, I ևն), որոնք փոքր քանակներով (սովորաբար՝ տոկոսի հազարերորդական մասեր) պարունակվում են օրգանիզմներում և անհրաժեշտ են նրանց բնականոն կենսագործունեության համար: Բույսերը Մ. ստանում են հողից, իսկ կենդանիներն ու մարդիկ՝ սննդից: Մ. մտնում են մի շարք խմորիչների, վիտամինների, հորմոնների, շնչառ. գունանյութերի բաղադրության մեջ: Ազդում են աճման (Mn, Zn, I՝ կենդանիների), բազմացման (Mn, Zn՝ կենդանիների, B, Mn, Cu, Mo՝ բույսերի), արյունաստեղծման (Fe, Cu, Co) վրա: Մ–ի անբավարարությունը կամ ավելցուկը հանգեցնում է նյութափոխանակության խանգարման: Մ. օգտագործում են գղտ. մշակաբույսերի բերրիության և կենդանիների արտադրողականության (կերերի մեջ ավելացմամբ) բարձրացման համար:

ՄԻԿՐՈՏՐՈՆ, էլեկտրոնային ցիկլոտրոն, էլեկտրոնների և պոզիտրոնների շրջանային ռեզոնանս. արագացուցիչ՝ ժամանակի ընթացքում հաստատուն մագնիս. դաշտով և արագացնող ԲՀ էլեկտրամագնիս. դաշտի հաստատուն հաճախականությամբ: Մ–ում կատարվում է ռեզոնանս. արագացում, քանի որ մասնիկների ուղեծրերով շարժվելու ժամանակն արագացնող դաշտի պարբերության բազմապատիկն է: Դաս. Մ–ում ստացվող մեծագույն էներգիան մոտ 30 *ՄէՎ* է, հատույթային Մ–ում՝ մինչև 5,71 *ԳէՎ*:

ՄԻԿՐՈՔԻՄԻԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, միկրովերլուծություն, փոքր քանակներով (0,01–0,001 *գ* զանգվածով նմուշ, մինչև 0,1 *մլ* ծավալով հեղուկ) անօրգ. և օրգ. նյութերի բաղադրության որակ. և քանակ. որոշման *վերլուծական քիմիայի* եղանակների ամբողջությունը:

ՄԻԿՐՈՕՐԳԱՆԻԶՄՆԵՐ, միկրոորներ, մանրագույն, միաբջիջ, միայն մանրադիտակով տեսանելի օրգանիզմներ՝ բակտերիաներ, մանրադիտակ. սնկիկներ, ջրիմուռներ, երբեմն՝ նաև նախակենդանիներ և վիրուսներ: Բնորոշվում են տարբեր պայմաններում (ջերմուկներ, օվկ–ի հատակ, լեռն. ձյուն ևն) գոյատևելու ընդունակ տեսակների մեծ բազմազանությամբ: Մ. կարևոր դեր ունեն բնության մեջ նյութերի շրջանառության համար: Օգտագործվում են սննդի և մանրէաբան. արդ–յան (գինեգործություն, հացաթխում, հակաբիոտիկների, վիտամինների, ամինաթթուների, սպիտակուցների ևն արտադր–յուն), գենային ճարտարագիտության մեջ: Ախտածին Մ. առաջացնում են բույսերի, կենդանիների և մարդկանց հիվանդություններ:

ՄԻԿՐՈՖԱՈՒՆԱ, կենդ. աշխարհի մանրադիտակ. և մանր օրգանիզմների մնացորդների ամբողջություն, որոնց համակարգ. պատկանելությունը որոշում են օպտիկ. միջոցներով:

ՄԻԿՈՒԼԻ Կարոլ Հակոբի (1821–1897), լեհահայ կոմպոզիտոր, դաշնակահար, մանկավարժ: Աշակերտել է Ֆ. *Շոպենին*: 1887–ին հիմնադրել է երաժշտ. դպրոց (հետագայում վերածվել է կոնսերվատորիայի): Հեղինակ է գործիք. երկերի (վալսեր, պոլոնեզներ, մազուրկաներ ևն), ֆրանս. երգերի, մշակել է լեհահայերի, լեհ., ռուս. (ձայնի և դաշնամուրի համար «Ռումինական ժողովրդական 48 մեղեդի», հ. 1–4, 1848–54), ուկր., գերմ., գուցուլ. երգեր: Կազմել և խմբագրել է Ֆ. Շոպենի երկերի ամբողջ. հրտ–յունը (1879):

ՄԻԿՈՒԼԻՆ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (1895–1985), ռուս կոնստրուկտոր: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1943): Գեն–մայոր–ճարտարագետ (1943): Սոց. աշխ. հերոս (1940): Մ–ի ղեկավարությամբ բազմաթիվ ինքնաթիռների (մխոցային, տուրբոպտուտակավոր, տուրբոռեակտիվ) համար ստեղծվել են շարժիչներ:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1942, 1943, 1946):

ՄԻԿՈՒՇԵՎԻՉ Վլադիմիր Բորիսովիչ (ծ. 1936), ռուս բանաստեղծ, թարգմանիչ: Հեղինակ է «Արշալույսի սանուհին» (1989), «Սոնետներ Մարիամ Աստվածածնին» (1997) բանաստեղծությունների ժողովների, փիլ–աստվածաբան. էսսեների և աֆորիզմների («Առկայծումներ», 1997) և այլ գործերի: Թարգմանել է Ռ. Մ. Ռիլկեի, Նովալիսի, Կրետեն դը Տրուայի, Գրիգոր Նարեկացու գործերից:

ՄԻՀՐ, 1. արևի, երկնային լույսի և արդարության աստվածը հինհայկ. դից–յան մեջ: *Արամազդի* որդին: Նախաքրիստ. շրջանում Մ–ին նվիրված տաճարներում հայերը նշել են Մեհեկան տոնը՝ նրա ծնունդը ժայռից: Մ–ի անունից է ծագել հայոց հեթանոս. սրբավայրերին տրվող ընդհանուր՝ «մեհյան» անվանումը: 2. Հայկ. հեթանոս. տոմարի ամիսների 8–րդ օրվա անվանումը: Կապվում է Մ–ի անվան հետ:

ՄԻՀՐԱՆ, XVII–XVIII դդ–ի աշուղ–բանաստեղծ: Պահպանվել են Մ–ի՝ հայ. ու թուրք. 59 խաղ–ոտանավորներ (հիմնականում՝ պանդխտության և սիրո թեմաներով)՝ բանահավաք Եղիա Մուշեղյան Կարնեցու գրառմամբ:

ՄԻՀՐԱՆՅԱՆՆԵՐ, իշխան. տոհմ Արցախ և Ուտիք նահանգ–ներում VI դ–ի վերջ–IX դ–ի սկզբին: Հիմնադրել է պարսիկ Սասանյաններից սերած Միհրը: Մ. դավով ու խորամանկությամբ կոտորել են *Առանշահիկների* մի մասին, աստիճանաբար գերիշխանության հասել՝ իրենց վերապահելով Աղվանքի «առաջին իշխանի» տիտղոսը: 2–3 սերնդից հետո ընդունել են

քրիստոնեություն և հայացել: Նշանավոր են Միհրը, Քաջ Վարդանը, *Ջիվանշիրը*, Վարազ-Տրդատ Ա-ն: Վերջին ներկայացուցիչ Վարազ-Տրդատ Գ-ն սպանվել է 821-ին: Մ-ի տեղը քաղ. ասպարեզում գրավել են Առանշահիկները:

ՄԻՀՐԴԱՏ I Մեծ (ծ. թ. անհտ–մ. թ. ա. մոտ 136), Պարթևաց արքա՝ մ. թ. ա. մոտ 171–138/137-ին: *Մազնեսիայի ճակատամարտից* (մ. թ. ա. 190) հետո Իրան. բարձրավանդակում առաջացած անկախ պետություններն աստիճանաբար միավորել է և ստեղծել հզոր տերություն: Նվաճել է *Բակտրիայի* զգալի մասը, մ. թ. ա. 155-ին՝ Փոքր Մարաստանը, 141-ին՝ Սելևկիա ք-ը, ապա՝ Բաբելոնը և իրեն հռչակել Բաբելոնի թագավոր: Դեպի Պարթևստանի արլ. սահմաններ շարժվող Միջին Ասիայի վաչկատուն ցեղերի առաջխաղացումը կասեցնելու նպատակով Մ. I մ. թ. ա. 141-ին մեկնել է Վրկանաց աշխարհ, մնացել է մինչև կյանքի վերջը:

ՄԻՀՐԴԱՏ II (ծ. թ. անհտ–մ. թ. ա. 88/87), Պարթևաց արքա՝ մ. թ. ա. մոտ 123-ից: Պարթև 1-ին թագավորը, որը կրել է «արքայից արքա» տիտղոսը: Պատերազմել է Հայոց թագավոր *Արտավազդ Ա*-ի դեմ և պատանդ վերցրել թագաժառանգ Տիգրանին (հետագայում՝ *Տիգրան Բ Մեծ*): Մ. թ. ա. 91-ին Մ. II-ի դեմ ապստամբել է արմ. նահանգ-ների կառավարիչ Գոդերձը (Գոտարզ), իրեն հռչակել արքա և Մ. II-ի մահից հետո կառավարել միանձնյա:

ՄԻՀՐԴԱՏ VI Եվպատոր (մ. թ. ա. 132–63), *Պոնտոսի* թագավոր՝ մ. թ. ա. 111-ից: Պայքարել է Հռոմի արլ. նվաճող. քաղ-յան դեմ (տես *Միհրդատյան պատերազմներ*), սերտորեն դաշնակցել է *Տիգրան Բ Մեծի* հետ (տես *Հայ-պոնտական դաշինք մ. թ. ա. 94*), որին կնության էր տվել իր դուստր Կլեոպատրային: Ինքնասպան է եղել Կրիմում:

ՄԻՀՐԴԱՏ ԻՓԵՐԱՑԻ (ծ. թ. անհտ–51), Մեծ Հայքի դրածո թագավոր՝ 35–37 և 47–51-ին: Իբերիայի Փարսման թագավորի եղբայրը: Խեղդամահ է եղել իր եղբորորդու՝ *Հռադամիզդի* ձեռքով:

ՄԻՀՐԴԱՏՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ 89–63, տեղի են ունեցել մ. թ. ա. 89–84, 83–81 և 74–63-ին՝ Հռոմի և Պոնտոսի թագավորության միջև: Անվանվել են *Միհրդատ VI*-ի անունով: 3-րդ պատերազմում հռոմ. զորքերը *Լուկուլլոսի* գլխավորությամբ Միհրդատ VI-ին դուրս են մղել իր երկրից, որից հետո նա անցել է Հայաստան և ապաստանել դաշնակից ու փեսա *Տիգրան Բ Մեծի* մոտ: Մ. թ. ա. 69-ին Լուկուլլոսը ներխուժել է Հայաստան, որը չէր մասնակցում Մ. պ-ին: Մ. պ. վերածվել են հռոմա-հայկ. պատերազմի: Միհրդատ VI-ին վերջն. պարտության է մատնել Գ. *Պոմպեոսը*: Մ. պ-ի հետևանքով Հռոմը տիրել է գրեթե ողջ Փոքր Ասիային:

ՄԻՄԱՆՍԱ. (սանսկրիտ՝ mimansa – հետազոտում, ներթափանցում, բանավեճ), հինհնդ. 6 ուղղափառ փիլ. ուսմունքներից. զբաղվել է վեդաների մեկնությամբ: Ձևավորվել է մ. թ. ա. II դ.–մ. թ. II–III դդ-ում: Հիմնադիր՝ *Ջայմինի*: Ընդունել է վեդաների հեղինակությունը, սակայն մերժել է կրոն. ճգնավորությունը, «ազատագրման» (մոկշա) ոչ պայման. արժեքը, ինչպես նաև արարիչ Աստծու և Տիեզերքի կառավարչի գոյությունը:

ՄԻՄԱՍ, *Սատուռն* մոլորակի արբանյակը: Հայտնաբերել է Ու. *Հերշելը* 1879-ին: Միջին հեռ. Սատուռնից՝ 186 հզ. *կմ*, տրամագիծը՝ 500 *կմ*, պտտման պարբերությունը՝ 22 *ժ* 37 *ր*: Երկրից երևում է 12,1 *ա. մ.*:

ՄԻՄԵՍԻՍ (հուն.՝ mimesis – նմանակում) **գեղագիտության մեջ**, հինհուն. փիլ-յան հասկացություն, որը բնորոշում է գեղ. ստեղծագործությունը, այդ թվում՝ նաև արվ-ը: Մ-ի գաղափարն առաջ են քաշել պյութագորասականները՝ երաժշտ. ներդաշնակությունը համարելով «երկնակամարների ներդաշնակության» արտացոլում: Մ-ին իդեալիստ. մեկնաբանություն է տվել *Պլատոնը*: Հայ գեղագիտ-յան մեջ Մ-ի գաղափարն արտահայտել են Մովսես Խորենացին, Եզնիկ Կողբացին, Դավիթ Անհաղթ, Դավիթ Քերականը, Անանուն Մեկնիչը, Ստեփանոս Սյունեցին և ուր.: Ամբողջ. ուսմունք է մշակել Հովհաննես Սարկավագ Իմաստասերը: Նոր ժամանակներում Մ-ին անդրադարձել են Ստեփանոս Լեհացին, Խաչատուր Էդզրումցին և ուր.:

ՄԻՄԻԿՐԻԱ. (անգլ.՝ mimicry, < հուն. mimicos – նմանվող), կենդանիների պաշտպ. գունավորման և արտաքին տեսքի ձևերից, որի դեպքում կենդանին նմանվում է շրջապատող միջավայրի առարկաներին, բույսերին, գիշատիչների կողմից ոչ ուտելի կամ դրանցից պաշտպանված կենդանիներին (*միմևպրիզմ*): Օր.՝ ծովային ձկան փշերը նման են ջրիմուռների, որոնց մեջ նա թաքնվում է:

Բույսերի Մ. ձևի, հոտի, գունավորման նմանությունն է այլ բույսերի կամ կենդանիների հետ:

ՄԻՄՆԵՐՄՈՍ, մ. թ. ա. VII դ-ի 2-րդ կեսի հույն բանաստեղծ: Հինհուն. գրկ-յան մեջ էրոտիկ պոեզիայի հիմնադիրը: Հեղինակ է «Նաննո» (կնոջ անունից) եղերերգերի ժող-ի, որից պահպանվել են պատառիկներ, նաև լիդիացիների դեմ Զմյուռնիայի բնակիչների հերոս. պայքարի մասին «Զմյուռնական» պոեմի:

ՄԻՄՈՂԱՄ, տես *Պատկառուկ*:

«ՄԻՄՈՍ», երգիծ. եռօրյա հանդես (1875–1877, Կ. Պոլիս՝ հայ., հայատառ թուրք.): Արտոնատեր-խմբ-ներ՝ Անտոն Սագայան, Հակոբ Այվազյան, Գառնիկ Պերպերյան, խմբ.՝ Հակոբ Հաճյան:

ՄԻՄՈՒՆԻ (Mimouni) Ռաշիդ (1945–1995), ալժիրցի ֆրանսիագիր գրող: Հեղինակ է «Ավելի գեղեցիկ կլինի գարունը» (1978), «Շրջված հոսանք» (1982), «Ապրել այս խաղաղ աշխարհում» (1983), «Տոմբեզա» (1984), «Ցեղի պատիվը» (1989), «Կյանքի բեռը» (1991), «Անեծք» (1993) վեպերի, «Մարդակեր կնոջ գոտին» (1990) նովել-ների ժող-ի:

ՄԻՅՈ (Milhaud) Դարիուս (1892–1974), ֆրանսիացի կոմպոզիտոր, դիրիժոր, երաժշտ. քննադատ: Հեղինակ է «Աղքատ նավաստին» (1926), «Քրիստափոր Կոլումբոս» (1928) օպերաների, «Ցուլը տանիքին» (1919), «Երկնագույն ճեպընթաց» (1924) բալետների, «Հրեղեն դղյակ» (1954, ֆաշիստ. ճամբարի զոհերի հիշատակին) կանտատի, նաև սիմֆոնիաների և այլ երկերի:

ՄԻՆ, կայսեր. հարստություն Չինաստանում՝ 1368–1644-ին: Հիմնադրել է *Ժու Յուան Ժանը*: Տապալվել է Լի Ցզիչանի գյուղաց. ապստամբության հետևանքով:

ՄԻՆ ՅՋՅԱ (անունների դպրոց), հինչին. փիլ-յան ուղղություններից (մ. թ. ա. VI–III դդ.). զբաղվել է «անվանումների» (հասկացություն) և իրականության փոխհարաբերության տրամաբ. վերլուծությամբ: Երևելի ներկայացուցիչներից էին Գունսուն Լունը և Հուի Շին:

ՄԻՆԱԿՈՎ Պյոտր Անդրեևիչ (1865–1931), դատ. բժշկագիտ-յան հիմնադիրներից Ռուսաստանում: Հետազոտել է մազերի դատաբժշկ. նշանակությունը և համեմատ. անատոմիան: Նկարագրել է արյան սուր կորստից մահվան ախտանշանը (այսպես կոչված **Մինակովի բծեր**):

ՄԻՆԱՆԳԿԱԲԱՈՒՆԵՐ (ինքնանվանումը՝ օրանգ մինանգ, օրանգ պատանգ), ժողդ Ինդոնեզիայում, Արմ. Սումատրա պրովինցիայի հիմն. բնակչությունը (3,7 մլն, 2000): Ապրում են նաև Սումատրա կղզու մյուս պրովինցիաներում և Ճավա կղզում, ինչպես նաև Արմ. Մալայզիայում (0,5 մլն): Ընդհ. թիվը՝ 5,5 մլն: Լեզուն՝ մանանգկաբաու: Սուննի մահմեդական են:

ՄԻՆԱՉ (Minář) Վլադիմիր (1922–1996), սլովակ գրող: ՉՍՍՀ վաստ. արվեստագետ (1970): Հեղինակ է «Մահը քայլում է լեռներով» (1948) վեպի, «Սերունդ» (1958–61) էպիկ. եռերգության, «Բորբոքելով հարազատ օջախները» (1970) և այլ էսսեների ժող-ների: ՉՍՍՀ Պետ. մրց. (1955):

ՄԻՆԱՉՅՈՎ Հարիր Մինաչևիչ (1908–2002), բաշկիր քիմիկոս-օրգանիկ: ՌԳԱ ակադ. (1979): Բաշկիրիայի ԳԱ պատվ. անդամ: Աշխ-ները վերաբերում են ածխաջրածինների կատալիտիկ փոխարկումներին և ցեոլիթային կատալիզորդներին:

ԽՍՀՄ Պետ. (1977), ՆԽ (1976), ԽՍՀՄ ԳԱ Ն. Դ. Զելինսկու (1974, 1987), Ա. Ա. Բալանդինի (1993) անվ. մրց-ներ:

ՄԻՆԱՍ, XIII դ-ի ճարտ.: 1248-ին կառուցել է *Հաղարծինի վանքի* սեղանատունը, որը ՀՀ-ում ամանօրինակ 2 կառույցներից մեկն է (մյուսը նույն՝ XIII դ-ի սեղանատունն է *Հաղպատի վանքում*):

ՄԻՆԱՍ, XV դ-ի մանրանկարիչ: Վասպուրականի մանրանկարչության դպրոցի նոր փուլի սկզբնավորողը: Համարվել է «հոչակավոր և անվանի», «քաջ նկարող»: Պահպանված գործերից 1-ինը թվագրված է 1433-ով, վերջինը՝ 1483-ով: Նրա ձեռագրած մատյաններից 19-ը Մոնղ-ում են, որոնք աչքի են ընկնում պատկերազարդման կանոնիկ, մշակված ձևերով, գունազարդ. հարուստ արտահայտչամիջոցներով:

ՄԻՆԱՍ, XVII դ-ի նկարիչ: Ապրել և ստեղծագործել է հայրենի Նոր Ջուղայում: Նրա բնանկարներն ու նատյուրմորտները (1-ին նմուշներն են հայ իրականության մեջ) կրում են արլ. արվ-ի շքեղության կնիքը: Ստեղծել է Ոսկան և Հակոբջան Վելիջանյանների դիմանկարները (Սբ Ամենափրկիչ վանքի թանգարան, Նոր Ջուղա), որմնազարդել եկեղեցիներ:

ՄԻՆԱՍ (Մինասյան) Իսկուհի Հակոբի (1884–1951), գրող: Լևոն Ժ. *Մինասյանի* մայրը: Գրել է հիմնականում ֆրանս.: Հեղինակ է չափածո, արձակ բանաստեղծությունների և նորավեպերի («Վենետիկյան մարգարիտներ», 1914, «Հեծեծումներ», «Այն ինչ մեռնում է», «Աթենքյան վարդեր», «Իտալիայի լուսաստվերը», 1928, «Զայներ գիշերվա մեջ», «Ապրել», ևն, ժող-ներ): Հայ. հրատարակվել է «Աստվածային խարկանք» (1995) ժող-ը:

ՄԻՆԱՍ Ա. ԱՎՆԵՑԻ (ծ. թ. անհտ–1753), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1751-ից: Եղել է *Մշո Սուրբ Կարապետ* վանքի առաջնորդ, 1749–51-ին՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք: Սբ Էջմիածնի միաբանութ-

յունում վերացրել է հոգևորականների միջև բուն դրած թշնամանքը:

ՄԻՆԱՍ ԱՄԴԵՑԻ, **Համդեցի**, (1630–1704), մատենագիր, գրիչ, եկեղեց. գործիչ: 1690–96, 1698–1702, 1704–ին՝ Երուսաղեմի հայոց պատրիարք: Ընդօրինակել է Սամվել Անեցու «Ժամանակագրութիւնը», Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», նրա ջանքերով 1–ին անգամ հրատարակվել են Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի ամբողջ. բնագիրը և ներբողները (1701–02): Հեղինակ է «Ազգաբանութիւն թագաւորացն Հայոց...» (1698, հրտ.՝ 1735), ինքնակենսագր. «Օրագրութիւն» (1680–1704, անտիպ) երկերի:

ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՏԱՒՆ-ԹԱՆ-ԳԱԼԱՆ, ՀԱՊ–ի մասնաճյուղ: Բացվել է 1982–ին Ջաջուռում (ճարտ.՝ Ռոմեո *Ջուլհակյան*): Ցուցադրվում են գեղանկարչ., գրաֆիկ., բեմանկարչ. աշխ–ներ, նաև որմնանկարների և դիմանկարների վերարտադր–յուններ են: Թանգարանն ունի նաև հուշաձեռագր. բաժին: 1988–ի երկրաշարժից շենքը վնասվել է, վերաբացվել է 2005–ին:

ՄԻՆԱՍ ԹՈՒԽԱԹՑԻ, **Թոխաթեցի, Լովանդացի, Լեհացի** (1510–1621/22), տաղասաց, գրիչ: Ընդօրինակել է ձեռագրեր: Գրել է գրաբար՝ աշխարհաբարի տարրերով, երբեմն էլ՝ խոսակց. լեզվով: Մ. Թ–ու «Ողբ ի վերայ Օլախաց երկրի հայերուն» ծավալուն բանաստեղծությունը կարևոր սկզբնաղբյուր է Մոլդովայի հայերի պատմության մասին: Հայտնի է Մ. Թ–ու «Գովասանք հերիսի» երգիծ. ոտանավորը:

ՄԻՆԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ, **Տիգրանյան** (մոտ 1658–1740), ազգ–ազատագր. շարժման գործիչ, եպս. (1716): Սասնակցել է *Ազգանակոթի ժողովին* (1699) և նշանակվել *Իսրայել Օրու* ուղեկից ու գործընկեր: Վերջինիս մահից (1711) հետո շարունակել է նրա գործը: 1716–ին *Եսայի Հասան–Ջալալյանը* Մ. Վ.–ին նշանակել է ռուսահայոց հոգևոր առաջնորդ: Մասնակցել է Պետրոս I–ի պարսկ. արշավանքին (1722):

ՄԻՆԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ, **Գասպարյանց, Արթվինցի**, XVIII դ–ի լուսավորիչ, մանկավարժ, ՄՄ անդամ: Հեղինակ է «Նոր գիւտ կամ գործ համարողական արհեստին» (1787) ձեռնարկի:

ՄԻՆԱՍ ՕՂԼՈՒ ԽՈՒՄԲ, «*Փոքր Հայքի կազմակերպության*» մասնաճյուղերից: Ստեղծել են (1885–ի կեսեր) Չարաշամբայի Գաբու Գայա գ–ի (Ջանիկի գվո) բնակիչներ Մինասյան 3 եղբայրները՝ հայ, թուրք, քուրդ աշխատավոր ժողովին թուրք և քուրդ ավազակախմբերից պաշտպանելու համար: Խմբի (շուրջ 200 անդամ) ղեկ–ն էր Հովհաննես Մինասյանը (Մինաս օղլի): 1897–ին կազմալուծվել է: Հ. Մինասյանն անցել է արտերկիր:

ՄԻՆԱՍԲԵԿՈՎ Դևիլ Ավագի (ծ. 1931), կոնստրուկտոր, հրթիռ. տեխնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. թեկնածու (1964): 1987–ից՝ ՌԴ Մեքենաշին. ԳԱՄ–ի գլխ. կոնստրուկտորի, 1997–ից՝ գլխ. տնօրենի տեղակալ: Գլխավորել է «Պրոտոն» հրթիռակրի, Ուր –100 մարտ. բալիստիկ հրթիռների ընտանիքի, «Ալմաստ» ուղեծր. կայանի, «Կոսմոս» սերիայի արբանյակների ստեղծման աշխ–ները: ԽՍՀՄ Պետ. մրց.:

ՄԻՆԱՍՅԱՆ Աշխեն Կարապետի (1902–1980), բուսաբույծ–ընտրասերումնաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1946): Աշխ–ները վերաբերում են գարու, ցորենի, եգիպտացորենի, երկհար թավոտ. վիկի տեսակակազմի, փոփոխականության և ագրոկենսբ. առանձնահատկություններին:

ՄԻՆԱՍՅԱՆ Աշոտ Իվանի (1911–1978), գյուղատնտես, մանրէաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1970): Աշխ–ները վերաբերում են հողի մանրէաբանության, ՀՀ կիսաանապատ., Սևանա լճի մերձափնյա հողերի իրացման, այգեգործության, պտղաբուծության և այլ հարցերի:

ՄԻՆԱՍՅԱՆ Արա Միքայելի (ծ. 1955), շտապ ու անհետաձգելի բուժ. օգնության բնագավառի մասնագետ: Բժշկ. գիտ. դ–ր (1995), պրոֆ. (1996): ՀՀ վիրաբուժ. ԳԱ անդամ (1998): Միքայել *Մինասյանի* որդին և Արմեն *Մինասյանի* եղբայրը: 1991–ից՝ Սբ Գրիգոր Լուսավորիչ բժշկ. կենտրոնի տնօրեն, 1998–ից՝նաև ՀՀ ՊՆ կենտր. ռազմաբժշկ. հանձնաժողովի նախագահ: Մասնակցել է առողջապ–յան շտապ ու անհետաձգելի բուժ. օգնության ուս. ծրագրերին և մեթոդների մշակմանը:

ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2–րդ աստիճանի շքանշան (2015), «Մխիթար Հերացի» (2004) մեդալ:

ՄԻՆԱՍՅԱՆ Արմեն Մինասի (1922–1997), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1971), պրոֆ. (1972), ՀՀ վաստ. բժիշկ (1970): Աշխ–ները վերաբերում են բրուցելոզի վիրաբուժ. ձևերի, աղիի կպումային անանցանելիության ախտածագման և բուժման, վիրաբուժության մեջ թթվածնաբուժության հարցերին: Առաջարկել է ենթաստամոքս. գեղձի առաջն. և երկրորդ. ախտահարումների բջջաբան. ախտորոշման մեթոդ:

ՄԻՆԱՍՅԱՆ Արմեն Միքայելի (ծ. 1963), պրոկտոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (2000), պրոֆ. (2001): Միքայել *Մինասյանի* որդին, Արա *Մինասյանի* եղբայրը: 2013–ից՝ ԵՊԲՀ պրոռեկտոր: Աշխ–ները վերաբերում են ուղիղ աղիի հիվանդությունների վիրաբուժ. բուժման խնդիրներին:

ՀՀ նախագահի մրց. (2016), «Մխիթար Հերացի» մեդալ (2009), ՀՀ ԱԺ նախագահի հուշամեդալ (2015):

ՄԻՆԱՍՅԱՆ Արմինե Միքայելի (ծ. 1953), թերապևտ: Բժշկ. գիտ. դ–ր (2015), պրոֆ. (2016): Աշխ–ները վերաբերում են ներքին հիվանդություններին, սրտաբանությանը, գաստրոէնտերոլոգիային, պարբեր. հիվանդություններին:

ԵՊԲՀ ռոկե մեդալ (2010):

ՄԻՆԱՍՅԱՆ Արշավիր Սերգեյի (1900–1964), ճարտ.: Համահեղինակ է Զրաշենի, Վերին և Ներքին Շենգավիթների հատակագծումների, Վանաձորի (1939), Գավառի (1946–48), Երևանի մանրամասն հատակագծման, Էջմիածնում՝ մշակույթի տան, Իջևանում՝ կամարապատ կամրջի և այլ նախագծերի:

ՄԻՆԱՍՅԱՆ Արսեն Լևոնի (ծ. 1976), մանկաբույժ, վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (2012): Արսեն Մ. *Մեսրոպյանի* թոռը: Աշխ–ները վերաբերում են երկարատև գերճնշման համախտանիշի ժամանակ ծայրամաս. նյարդերի նյարդաֆիզիոլոգ. և հյուսվածաբան. հարցերին:

ՄԻՆԱՍՅԱՆ Արսեն Մեսրոպի (1913–1992), մանկավարժ–արատաբան: Մանկավարժ. գիտ. թեկնածու (1973), պրոֆ. (1981): ՀԽՍՀ վաստ. ուսուցիչ: 1983–92–ին՝ ՀՊՄԻ արատաբանության ամբիոնի հիմնադիր–վարիչ: Հեղինակ է արատաբան. խնդիրներով երեխաների դաստիարակությանը վերաբերող աշխ–ների:

ՀՊՄԻ Խ. Աբովյանի անվ. մեդալ (1966):

ՄԻՆԱՍՅԱՆ Արտաշես Նավասարդի (ծ. 1961), շախմատիստ: Միջազգ. գրոսմայստեր (1992): ԽՍՀՄ (1991), Եվրոպայի (1999), ՀՀ (1990, 1992–93) չեմպիոն, շախմատի համաշխ. օլիմպիադայի բրոնզե (1992), ոսկե (2006, 2008) մեդալակիր՝ թիմ. հաշվարկում:

ՀՀ «Մովսես Խորենացի» (2006), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1–ին աստիճանի (2008) մեդալներ:

ՄԻՆԱՍՅԱՆ Գագիկ Մելիքսեթի (ծ. 1959), խմբ., հրապարակախոս, պետ. աշխատող: 2001–ից՝ «Հայաստանի Հանրապետության» օրաթերթի գլխ. խմբ–ի տեղակալ, 2005–ից՝ «Կրթություն» շաբաթաթերթի գլխ. խմբ.: Հեղինակ է փաստավավերագր., գր., երգիծ. գործերի: Բնության և հաս–յան մասին գիտ–յունների միջազգ. ակադ–ի անդամ:

ՀՀ «Երախտագիտություն», ԿԳՆ և ԵՊՀ ոսկե մեդալներ:

ՄԻՆԱՍՅԱՆ Գեորգի Արտավազդի (1942–2004), երգիչ: «Ուրարտու», ապա՝ «Պոպուլյար» էստրադ. անսամբլների հիմնադիր–գեղ. ղեկ.: 1966–67–ին՝ Սոչիի ֆիլհարմոնիայի, 1967–72–ին՝ Ռուսհամերգի, 1972–ից՝ Հայաստանի պետ. սիմֆ–էստրադ. նվագախմբի, 1977–ից՝ Հայհամերգի մենակատար («Գալիս ես, գալիս ես», «Արևիկ է անունդ», «Հայաստան իմ չքնաղ» ևն): Հայ կոմպոզիտորների որոշ էստրադ. երգերի առաջին կատարողը:

ՄԻՆԱՍՅԱՆ Գոռ Տիգրանի (ծ. 1994), ծանրորդ: Օլիմպ. խաղերի արծաթե (2016), աշխարհի առաջնության բրոնզե (2015), Երիտասարդ. օլիմպ. խաղերի (2010), Եվրոպայի առաջնության արծաթե (2016, 2017) մեդալակիր:

ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1–ին աստիճանի մեդալ (2016):

ՄԻՆԱՍՅԱՆ Գուրգեն Արմենակի (1907–1983), մարզ. բժշկության և բուժ. ֆիզկուլտուրայի բնագավառի գիտնական: Բժշկ. գիտ. դ–ր (1968), պրոֆ. (1969): ՀԽՍՀ վաստ. բժիշկ (1963): Աշխ–ները վերաբերում են վնասված վերջույթի հենաշարժ. ֆունկցիայի վերականգնման նոր մեթոդների ու սարքավորումների մշակմանը, երեխաների կեցվածքի շեղումների շտկմանը:

ՄԻՆԱՍՅԱՆ Դավիթ Յուրիի (ծ. 1974), քանդ., բեմանկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (2011): Յուրի *Մինասյանի* որդին: 2003–ից՝ Երևանի Համազգ. թատրոնի գլխ. նկարիչ: Հեղինակ է «Աղջիկն ու շունը» (1998, «Լավագույն քանդակ» մրց.) քանդակի, «Սոսկովյան բակապանը» (2004, Երևան) արձանի, «Տղամարդիկ» քանդակախմբի (2007, Երևան), «Լեոնիդ Ենգիբարյան» (2012, Ծաղկաձոր), «Սոս Սարգսյան» (2014, Ստեփանավան) հուշարձանների, «Ուշացած լուսանկար» արձանախմբի (2015, Երևան): Ձևավորել է ներկայացումներ (Ռ. Մարուխյանի «Ամենալավ տունը», 2002, «Մարդը լամանշից», 2006):

ՀԹԳՄ «Արտավազդ» մրց. (2006):

ՄԻՆԱՍՅԱՆ Էդիկ Գարեգինի (ծ. 1956), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (2003), պրոֆ. (2005): 2009–ից՝ ԵՊՀ պատմության ֆակ–ի դեկան: Աշխ–ները վերաբերում են Հայոց պատմության նորագույն շրջանի հարցերին («Սոցիալ–տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում 1990–2003 թթ.»,

2003, «Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն», 2013, ևն), դիվանագիտ–յան պատմությանը:

Բնության և հաս–յան մասին գիտ–յունների միջազգ. ակադ–ի անդամ (2002–ից):

ՄԻՆԱՍՅԱՆ Իլյա (Իլյիչ) Հմայակի (1929–2005), շվիահար: ՀՀ վաստ. արտիստ (1961): Պրոֆ. (1996): ՀՊՄԻ–ի ժող. գործիքների բաժնի հիմնադիրներից: 1947–91–ին՝ Հայֆիլհարմոնիայի, 1991–ից՝ Երևանի կամեր. երաժշտության տան մենակատար: Նվագացանկում՝ հայկ. և աշխարհի ժողովների մեղեդիներ: Հայկ. շվին առաջինն է ներկայացրել արտերկրում:

Ժող. գործիքներ նվագողների (1957, Մոսկվա), Էստրադ. արտիստների (1958, Մոսկվա) համամիութ. մրցույթների 1–ին մրց–ներ:

ՄԻՆԱՍՅԱՆ Լև Գրիգորի (1936–1986), անասնաբույծ–ընտրասերումնաբան: Գղտ. գիտ. դ–ր (1979), պրոֆ. (1981): Աշխ–ները վերաբերում են կիսանրբագեղմ ոչխարների ցեղերի ստեղծման, տոհմ. հատկանիշների կատարելագործման, մթերատվության և մթերքի որակի բարձրացման խնդիրներին: Մ–ի ղեկավարությամբ ստեղծվել են կորիդել տիպի ոչխարի հոտեր:

ՄԻՆԱՍՅԱՆ Լևոն Գալուստի (1920–2012), բանասեր, թարգմանիչ, մատենագետ, հրտ.: 1957–72–ին՝ Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքի թանգարանի տնօրեն: Հեղինակ է «Պատմութիւն Փերիայի հայերի» (1971), «Գրչութեան արուեստը Նոր Ջուղայում» (1991), «Նոր Ջուղայի եկեղեցիները» (1992), «Իրանահայ պարբերական մամուլը. 1894–1994» (1994), «Հայ տպագիր գիրքը Իրանում. 1638–2000» (2001), «Իրանի հայկական վանքերը» (2003) և այլ աշխ–ների, բանաստեղծությունների ժող–ների: Թարգմանություններ է արել պարսկ–ից:

ՄԻՆԱՍՅԱՆ Լևոն Ժակի (1905–1978), նկարիչ: Իսկուհի *Մինասի* որդին: 1940–ական թթ–ի վերջին ստեղծել է ֆանտաստիկ կերպավորումներով, քնար. գործեր («Ծովահայաց պատուհանը», «Լքված կարուսել», «Իրերը արշալույսին», «Կոմպոզիցիա» ևն): Հրատարակվել է «Լևոն Մինասյանի գծանկարները» (1958) ալբոմը:

ՄԻՆԱՍՅԱՆ Լևոն Մամիկոնի (ծ. 1950), անասնաբույծ: Գղտ. գիտ. դ–ր (2014): 1996–99–ին՝ Անասնաբուծության ԳՀԻ տնօրեն, 2007–11–ին՝ ՀՀ ԳՆ վարչության պետ: Աշխ–ները վերաբերում են կաթնատու տավարաբուծության զարգացման, տոհմ. ընտրասերման հատկանիշների կատարելագործման, տավարաբուծության տեխնոլոգիաների մշակման հարցերին:

ՄԻՆԱՍՅԱՆ Կարապետ (Կարո) Հարությունի (1908–1966), բեմանկարիչ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1956): Ձևավորել է 120–ից ավելի բեմադրություններ (Վ. Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը», 1940, Շ. Գունոյի «Ռոմեո և Ջուլիետ», 1955, Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ», 1952, օպերաներ, Գ. Եղիազարյանի «Սևան» բալետ, 1956, ևն):

ՄԻՆԱՍՅԱՆ Հայկ Ռոբերտի (ծ. 1952), ֆիզիկոս–տեսաբան: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1990), պրոֆ. (1995): Աշխ–ները վերաբերում են լազեր. ճառագայթման փոխազդեցությանը կիսահաղորդիչների ու մետաղների հետ, ցածր չափային կիսահաղորդչ. և մետաղ. համակարգերի օպտիկ. հատկություններին: ՀԼԿԵՄ մրց. (1980):

ՄԻՆԱՍՅԱՆ Հարություն Հովհաննեսի (1920–1988), վիրաբույժ: Բժշկ. գիտ. թեկնածու (1953): ՀՀ–ում առաջիններից է կիրառել ինտուբացիոն նարկոզը, կատարել կերակրափողահատում (1954), ներդրել (1976) ստամոքսի և 12–մատնյա աղիի խոց. հիվանդության բուժման ժամանակ թափառող նյարդի մոտակա ընտրողական հատումը (սելեկտիվ պրոքսիմալ վագոտոմիա): Երևանի գլխ. վիրաբույժ (1954–56, 1963–76):

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան:

ՄԻՆԱՍՅԱՆ Հովհաննես Մարտիրոսի (1928–1972), նկարիչ: ՀԽՍՀ վաստ. նկարիչ (1970): Գործերում [«Սրինգ», 1963, «Վահագն Վիշապաքաղ», 1967, «Վերածնունդ», 1971, «Փառք հայ գրի և դպրության», որմնանկարաշար (1962–65, Հենրիկ *Մամյանի* հետ, Օշականի Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում)] զուգորդել է ազգ. գեղանկարչ. ավանդույթներն ու արդիական ձևամտածողությունը:

ՄԻՆԱՍՅԱՆ Մարտիրոս Պողոսի (1926–2016), լեզվաբան, բանասեր, բնագրագետ: Բանասիր. գիտ. թեկնածու (1961): 1974–ից՝ Ժնևում, ապա՝ ԱՄՆ–ում: Հեղինակ է «Արևելահայերէնի քերականութիւն» (1980), «Գրաբարի բայացանկեր» (ֆրանս., 1985), «Նոր կտակարանի բնագիրը եւ դասական հայերէնը» (1990), «Մատթէոսի յունարէն աւետարանի գրաբար բառացի թարգմանութիւն» (2002), «Գրաբար աւետարանների բառագանձը» (2005) և այլ աշխ–ների: Կազմել է «Ավետարանների լիակատար համաբարբառները» (2003), թարգմանել է Ա. Մեյեի «Հայագիտական ուսումնասիրություններ» (1978) ժող–ը:

ՄԻՆԱՍՅԱՆ Մելս Մնացականի (1937–2005), մեխանիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (2009): Աշխ–ները վերաբերում են ձևախախտվող հոծ միջավայրերի մաթ. մոդելավորմանը, նրանցում ալիք. և տատանող. շարժընթացներին:

ՄԻՆԱՍՅԱՆ Միքայել Գարեգինի (1929–1993), տեղեկագիտ. և կառավարման համակարգերի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1986): Տեղեկագիտ–յան միջազգ. ակադ–ի թղթ. անդամ (1992): Աշխ–ները վերաբերում են տեխ. բարդ համակարգերի կառուցվածքների և դրանց կառավարման ալգորիթմների մշակմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1987):

ՄԻՆԱՍՅԱՆ Միքայել Մկրտչի (1927–2013), փիլ.: Փիլ. գիտ. դ–ր (1984), պրոֆ. (1985): Արա և Արմեն *Մինասյանների* հայրը: Հեղինակ է «Կառավարման կատարելագործման դիալեկտիկան արդի պայմաններում» (1990), «Ժամանակը, մարդը և նրա գործը» (2002), «Քաղաքական էլիտա» (2005) և այլ աշխ–ների:

ՄԻՆԱՍՅԱՆ Մկրտիչ Մինասի (ծ. 1940), ճարտ.: ՀՀ վաստ. ճարտ. (2009): 1991–93–ին՝ Երևանի գլխ. ճարտ.: ՀՃՄ նախագահ (2002–ից): Մ–ի նախագծերով և համահեղինակությամբ Երևանում կառուցվել են ընդունելությունների տունը (1972), մետրոպոլիտենի «Հանրապետության հրապարակ» կայարանը (1981, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1983), Պետմատի հաշվող. կենտրոնի և Պետապի վարչ. շենքերը (1984), Տնտեսագիտ. համալսարանի մասնաշենքը (2004), Գործարար. կենտրոն (2005)՝ Նորքում, հյուրանոց (2012)՝ Ամիրյան փողոցում, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գ–ում՝ Սբ Թուխ Մանուկ եկեղեցին (1997) ևն: Տարվա լավագույն ստեղծագործության համամիութ. ստուգատեսի դափնեկիր (1982), ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2014), Երևանի քաղաքապետարանի «Արգիշտի Ա» հուշամեդալ (2015):

ՄԻՆԱՍՅԱՆ Սուշեղ Մինասի (1902–1987), պատմաբան, գեն–մայոր (1961): Պատմ. գիտ. դ–ր (1958): ՀՄՊ–ի ժամանակ մասնակցել է Բելոռուսիայի և Մերձբալթիկայի ազատագրմանը: Հեղինակ է «Հաղթանակը Բելոռուսիայում» (1952), «Հարավարևելյան Եվրոպայի ժողովուրդների ազատագրումը» (ռուս., 1967) երկերի: Մասնակցել է «Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմի պատմությունը 1941–1945 թթ.» բազմահատորյակի հրտ–յանը (1960–65):

ՄԻՆԱՍՅԱՆ Յուրի Սուրենի (ծ. 1942), քանդ.: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2015): Դավիթ *Մինասյանի* հայրը: Հեղինակ է կոմպոզիցիաների («Ողբը», 1969, «Խորհել Օրի. Նամակ Պետրոս Մեծին», 1982, ևն), հայդուկների արձանախմբի (1989, գ. Ուջան), Պետրոս Աբաջյանի հուշահամալիրի (1993, գ. Վարևան, Ախալքալաքի շրջան), խաչքարերի Վառնայի (Բուլղարիա) հայկ. եկեղեցու բակում և Օլերոն կղզում (Ֆրանսիա, երկուսն էլ՝ 1993), Յ. Գյոթեի դիմաքանդակի (1974, Վայմար) ևն:

ՄԻՆԱՍՅԱՆ Պետրոս (1799–1867), դրամատուրգ, կլասիցիզմի տեսաբան: ՎԱստՄՄ անդամ (1825): «Համազգայաց» ընկ–յան հիմնադիրը (1846, Կ. Պոլիս): Հեղինակ է «Խոսրով Մեծ», «Սմբատ Առաջին» պիեսների (1845, «Թատերգութիւնք» խորագրով):

ՄԻՆԱՍՅԱՆ Ռազմիկ Սարգսի (ծ. 1938), շին. մեխանիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1987), պրոֆ. (1988): ՀԳԳԱ ակադ. (1995): 1991–2004–ին՝ ՀՊԱՀ–ի պրոռեկտոր, 2004–ից՝ նյութերի դիմադրության և ճարտարագիտ. կառուցվածքների ամբիոնի վարիչ: Աշխ–ները վերաբերում են շին. և հիդրոտեխ. կառուցվածքների լարվածաձևախախտված վիճակներին, գղտ. մեքենաների մասերի ու սարքերի ամրության հարցերին, հողի կտրման տեսությանը, առաձգականության տեսության ստատիկ և դինամիկ խնդիրներին: ՌԴ Պետ. մրց. (1992):

ՄԻՆԱՍՅԱՆ Ռաիսա Սարկոսի (ծ. 1935), մանկաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1973), պրոֆ. (1974): Աշխ–ները վերաբերում են վաղ տարիքի երեխաների ստամոքսաղիք., երիկամ. հիվանդություններին, իմունաբանությանը, նորածնաբանությանը (նեոնատոլոգիա) և Հայաստանում մանկաբուժության պատմությանը:

ՄԻՆԱՍՅԱՆ Ռոբերտ Սարիբեկի (ծ. 1934), երկրաֆիզիկոս: Երկրբ–ինքբ. գիտ. դ–ր (1992), պրոֆ. (2003): Աշխ–ները վերաբերում են երկրաֆիզ. մեթոդներով հրաբխ. մարզերի, ստորերկրյա ջրերի ձևավորման ու տարածման առանձնահատկությունների, դրանց հայտնաբերման մեթոդաբանության, սողանք. երևույթների ուսումնասիրության հարցերին:

ՄԻՆԱՍՅԱՆ Ռոզա Արմենակի (1907–1987), դերասանուհի: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1950): 1925–30–ին՝ Երևանի Առաջին պետ., 1937–ից՝ Լենինականի պետ. դրամատիկ. թատրոնների դերասանուհի (նաև ռեժ., 1951–ին՝ տնօրեն): Բեմադրել է Ա. Ս. Պուշկինի «Ժլատ ասպետը», Ն. Ֆ. Պոգոդինի «Արծաթե ձորակ», Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ» ևն:

ՄԻՆԱՍՅԱՆ Սարգիս, **Արամ Աշոտ** (1873–1915), խմբ., կրթ. գործիչ: Նյութեր է հրապարակել «Դրօշակ» թերթում՝ «Թուրքիոյ շուրջը» խորագրով, եղել է ՀՅԴ «Հայրենիք» օրաթերթի խմբ.: Մեծ եղեռնի զոհ:

ՄԻՆԱՍՅԱՆ Սերգեյ Աշոտի (ծ. 1949), ճարտարագետ, ջերմաէներգետիկ: Տեխ. գիտ. դ–ր (1999), պրոֆ. (2003): ՌԴ վաստ. ճարտարագետ (2000): Աշխ–ները վերաբերում են էլեկտրակայանների ջերմամեխ. սարքավորումների հուսալիության, հանրապետության պինդ վառելանյութի հանքավայրերի բնութագրերի գնահատման խնդիրներին: ՀՃԱ նախագահ (2003), ՄՃԱ փոխնախագահ (2003):

Միջազգ. վառելիքաէներգետիկ. ընկերակցության Ն. Կ. Բայբակովի անվ. մրց. (2004), ՄՃԱ Մեծ արծաթե (2004), ՀՀ ԿԳՆ ոսկե (2005) մեդալներ:

ՄԻՆԱՍՅԱՆ Սերգեյ Սամիկոնի (ծ. 1977), քաղաքագետ: Քաղ. գիտ. դ–ր (2013): Աշխ–ները վերաբերում են Հվ. Կովկասի տարածաշրջ. քաղ–յան և անվտանգության հարցերին, էթնոքաղ. հակամարտություններին, միջազգ. հարաբերությունների պատմությանն ու տեսությանը, զսպման տեսությանը, սպառազինությունների վերահսկման խնդիրներին:

ՄԻՆԱՍՅԱՆ Սիլվա (Զիգֆրիդա) Արշավիրի (1926–2000), բալետի արտիստուհի: ՀՀ ժող. արտիստ (1963): 1946–69–ին՝ ԵՕԲԹ մենապարուհի (Գայանե, Էգինա՝ Ա. Խաչատրյանի «Գայանե», «Սպարտակ», Միրթա՝ Ա. Ադանի «Ժիզել», ևն):

ՄԻՆԱՍՅԱՆ Սիրանուշ Մինասի (ծ. 1939), ֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ–ր (1987), պրոֆ. (1988): Առաջարկել է թրթռման հանդեպ գլխուղեղի տարբեր գոյացությունների ռեակցիայի հայեցակարգային մոդել՝ նեյրոնային սխեմայի ձևով, որը հաջողությամբ օգտագործվում է թրթռումային հիվանդության ախտաբանության կենտր. մեխանիզմների բացահայտման համար: Նյու Յորքի (1995–ից), Էկոլոգիայի և կենսագործունեության անվտանգության միջազգ. (1996–ից) ԳԱ–ների անդամ:

ՄԻՆԱՍՅԱՆ Վահան Միքայելի (ծ. 1963), մանկաբարձ–գինեկոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (2000): Աշխ–ները վերաբերում են կնոջ հղիության ընթացքին, վարակիչ հիվանդությունների, բորբոքումների, անպտղության բուժմանը:

ՄԻՆԱՍՈՎ Ռոդիոն Իվանի (1896–1958), խորհրդ. բանակի ինտենդանտ. ծառայության գեն–մայոր (1945): Մասնակցել է ԱՀՊ–ին: ՀՄՊ–ի ժամանակ եղել է Անդրբայկալյան ռազմաճակատի ֆին. մասի պետ: Մասնակցել է Ճապոնիայի դեմ ռազմ. գործողություններին:

Լենինի, Կարմիր դրոշի (2), ՀՄՊ 1–ին աստիճանի շքանշաններ:

ՄԻՆԱՍՈՎԻՉ (Minasowicz) Յան Կլեմենտս (1797–1854), հայազգի նկարիչ, արվեստաբան: Ստեղծել է մատենանիշներ, դիմանկարներ: Հեղինակ է բանաստեղծությունների, կատարել է թարգմանություններ Պետրարկայի, Վերգիլիոսի և ուր. գործերից:

ՄԻՆԱՍՈՎԻՉ Յուզեֆ Դիոնիս (1792–1849), հայազգի լեհագիր բանաստեղծ, թարգմանիչ, պետ., հաս. գործիչ, խմբ.: 1820–21–ին՝ «Երաժշտական շաբաթաթերթ»–ի (Վարշավա) խմբ.: Վարշավայի համալսարանի պրոֆ.: Հայտնի է Մ–ի «Մարդը» (1816) քերթվածը: Հեղինակ է նաև հոգևոր երգերի ժող–ի (հրտ.՝ 1825): 1844–ին հրատարակվել է Մ–ի սեփական և թարգմ. «Երկերի» 4–րդ հատորը: Ֆ. Շիլլերի և Յ. Վ. Գյոթեի առաջին թարգմանիչներից է լեհ. իրականության մեջ:

ՄԻՆԱՍՈՎԻՉ Յուզեֆ Էպիֆան (1718–1796), հայազգի լեհագիր բանաստեղծ, թարգմանիչ, հրապարակագիր: Իրավագիտ. դ–ր: 1769–73 և 1778–81–ին՝ «Մոնիթոր» (լեհ.) հանդեսի խմբ.: Հեղինակ է ավելի քան 40 հատոր (լեհ., լատ.) պատմագիտ., իմաստասիր., աստվածաբան. և այլ թեմաներով աշխ–ների, բանաստեղծությունների ժող–ների, թարգմ–յունների: Աշխ–ներում անդրադարձել է լեհահայերի կյանքին, հայազգի լեհ. բանաստեղծներին («Լվովի լեհահայոց արքեպիսկոպոսների վարքագրությունը քառյակներով շարադրեալ...», 1762, ևն): Լեհ. է թարգմանել լատ–ից, ֆրանս–ից, հուն–ից:

ՄԻՆԱՐԵԹ, **մինարե**, կտրվածքով կլոր, քառակուսի կամ բազմանիստ աշտարակ՝ մահմեդականներին աղոթքի հրավիրելու համար: Տեղադրվում է *մզկիթի* կողքին կամ ընդգրկվում նրա հորինվածքում: ԼՂՀ–ում պահպանվել են Շուշիի մզկիթին կից:

ՄԻՆԴԱՆԱՈ (Mindanao), կղզի Ֆիլիպինյան կղզեխմբի հվ–ում: Տարածքը՝ 94,6 հզ. *կմ*^{2}, բն.՝ 22 մլն (2010): Ափագիծը կտրված է: Ռելիեֆում հերթագայվում են հրաբխ. զանգվածներն ու դաշտավայրերը: Կան գործող հրաբուխներ (Ապո լ., 2954 մ, Ֆիլիպինների ամենաբարձր կետը): Հաճախակի են երկրաշարժերը: Մշակում են բրինձ, մանիլյան կանեփաթել, արքայախնձոր, կոկոսյան արմավենի: Գլխ. քաղաքները՝ Դավաո, Զամբոանգա:

ՄԻՆԴՈՒՎԱՈՒՀՈ (Ու Վուն, 1909–2004), բիրմացի գրող, բանասեր: Հեղինակ է «Մինդուվուն» (1936), «Օրորոցայիններ» (1939), «Մեխակի ծառ» (1941) բանաստեղծությունների ժող–ների, «Բիրմաներեն, բիրմանական մշակույթ» (1966) աշխ–յան, նաև պատմվածքների:

ՄԻՆԵՍՈԹԱ (Minnesota), նահց ԱՄՆ–ի հս–ում: Տարածքը՝ 224,3 հզ. *կմ*^{2}, բն.՝ 5,5 մլն (2015): Վարչ. կենտրոնը՝ *Սենթ Պոլ*:

ՄԻՆԵՍՈԹԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ԱՄՆ–ի խոշորագույն բուհերից և ԳՀԻ–ներից: Հիմնադրվել է 1851–ին: Մասնաճյուղեր ունի նահց–ի Մինեապոլիս, Սենտ Պոլ, Դուլուտ, Մորիս, Քրուքսթոն, Ռոչեսթր ք–ներում: 2015–ին ուներ շուրջ 65 հզ. ուսանող:

ՄԻՆԵՐԱԼ, (ֆրանս.՝ mineral, < ուշ լատ. minera – հանքանյութ), քիմիապես և կառուցվածքով նույնականացված բնական մարմին, որը քիմ. կազմությամբ և ֆիզ. հատկություններով մոտավորապես համասեռ է, երկրակեղևում անընդհատ ընթացող բարդ շարժընթացների արգասիք: Հայտնի են Մ–ների մոտ 3 հզ. տեսակներ: Առավել տարածված են սիլիկատները (մոտ 25 %), օքսիդները և հիդրօքսիդները, սուլֆիդները և իրենց նմանականները (մոտ 13 %), ֆոսֆատները, արսենատները, վանադիտները (մոտ 18 %): Մ–ի դասակարգման հիմքում ընկած են քիմ. միացությունների տիպերի, բյուրեղ. կառուցվածքի տարածվածության պատճառների տարբերությունները: Տարբերակիչ հատկություններն են նստվածքի ձևը, գույնը, կարծր–յունը, խտ–յունը, մեխ., օպտիկ., էլ. և այլ առանձնահատկություններ: Մ. կա նաև մետեորիտների կազմում, հայտնաբերվել է նաև Լուսնի և Մարսի վրա:

ՄԻՆԵՐԱԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գիտ–յուն *միներալների*, նրանց կազմության, ներքին կառուցվածքի, հատկությունների, առաջացման և փոփոխությունների մասին: Ուսումնասիրում է ապարների և հանքանյութերի բաղադրամասերը, միներալները և տարբեր երկրբ. պայմաններում ընթացող միներալառաջացման շարժընթացները: Որպես ինքնուրույն գիտ–յուն՝ ձևավորվել է Վերածննդի դարաշրջանում: Մ–յան նորագույն շրջանի զարգացումը կապված է Ռ. Ժ. Գայուի, Ա. Վեռների, Մ. Վ. Լոմոնոսովի, Վ. Ս. Սևերգինի և ուր. անունների հետ: ՀՀ–ում Մ–յան հետազոտությունները կատարվում են ՀՀ ԳԱԱ երկրբ. գիտ–յունների ինստ–ում, ԵՊՀ–ում, ՀՀ երկրբ. վարչությունում:

ՄԻՆԵՐԱԼՆԵՐ ՎՈՂԻ, առողջավայրերի խումբ (Եսենտուկի, Ժելեզնովոդսկ, Պյատիգորսկ, Կիսլովոդսկ) Հս. Կովկասում՝ Ստավրոպոլի երկրամասում: Ունի ավելի քան 130 հանք. աղբյուրներ և տղմային ցեխի մեծ պաշարներ (Տամբուկանյան լիճ): 1992–ին շրջանին տրվել է ՌԴ հատուկ պահպանվող էկոլոգաառողջավայր. կարգավիճակ:

ՄԻՆԵՐՎԱ, արհեստների և արվ–ների հովանավորուհին հռոմ. դից–յան մեջ: Մ. *Յուպիտերի* և *Յունոնայի* հետ կազմել է Կապիտոլիումի երրորդությունը: Մ. թ. ա. III դ–ի վերջին Մ. նույնացվել է հուն. Աթենասին, պաշտել են որպես ռազմի և իմաստության աստվածուհու:

ՄԻՆԻԽ Գրիգորի Նիկոլաևիչ (1836–1896), ռուս ախտաբան–անատոմ և վարակաբան: Իր վրա կատարած փորձով ապացուցել է (1874) հետադարձ տիֆով հիվանդների արյան վարակելիությունը, ցույց է տվել արյունածուծ միջատների դերը բծավոր և հետադարձ տիֆերի տարածման մեջ: Հետազոտել է նաև ժանտախտը, բորը, սիբիրախտը:

ՄԻՆԻՆ Կուզմա (ծ. թ. անհտ–1616), XVII դ–ի սկզբին Ռեչ Պոսպոլիտայի ինտերվենցիայի շրջանում Ռուսաստանում 2–րդ ժող. աշխարհազորի (1611–12) կազմակերպիչներից ու ղեկ–ներից՝ իշխան Դ. Մ. *Պոժարսկու* հետ: Ռուս. Ազգ. հերոս: 1611–ից՝ Նիժնի Նովգորոդի զեմստվոյական ավագ: Մեծ ակտիվություն և արիություն է ցուցաբերել 1612–ին լեհա–լիտվ. զորքերից Մոսկվայի ազատագրման մարտերում: 1613–ից անվանակոչվել է Կուզմա Մինիչ:

ՄԻՆԿՈՎ (Minkov) Սվետոսլավ (1902–1966), բուլղար գրող, լրագրող: Բուլղ. գիտաֆանտաստիկ գրկ–յան հիմնադիրներից: Հեղինակ է «Կապույտ քրիզանթեմ» (1922), «Կրակե թռչունը» (1927), «Ավտոմատներ» (1932), «Պատմվածքներ ոզնու մորթով» (1936), «Ծանրոց Ամերիկայից» (1950), «ԱՄՆ–ի արտոնագիր» (1963) պատմվածքների և ակնարկների ժող–ների: Հայ. հրատարակվել է «Այս բանը պատահել է Լամպադեֆորիայում» (1964) պատմվածքը:

ՄԻՆԿՈՎՍԿԻ (Minkowski) Հերման (1864–1909), գերմանացի մաթեմատիկոս և ֆիզիկոս (ծագումով՝ հրեա): Տվել է հարաբերականության հատուկ տեսության կինեմատիկայի երկրչի. մեկնաբանությունը (*Մինկովսկու տարածություն–ժամանակ*):

ՄԻՆՆԿՈՎՍԿՈՒ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ–ԺԱՄԱՆԱԿ, քառաչափ տարածություն, որի կետերը պատահույթներ են՝ տրված տարած. դեկարտյան 3 կոորդինատներով և տեղի ունենալու ժամանակով: Մ. տ–ժ.

կեղծէվկլիդեսյան չափականությամբ հարթ տարածություն է, որը տալիս է պատահույթների միջև եղած քառաչափ միջակայքը: Ներմուծել է Հ. *Մինկովսկին* 1908–ին:

ՄԻՆԿՈՒՍ (Minkus) Լեոն (Ալոիզ Լյուդվիգ, 1826–1917), չեխ կոմպոզիտոր, ջութակահար: 1853–ից աշխատել է Մոսկվայի Մեծ, Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոններում: 1890–ից՝ Վիեննայում: Հեղինակ է բալետների («Ֆիամետտա կամ Սիրո հաղթանակը», բեմ.՝ 1863, «Դոն Կիխոտ», 1869, «Բայադերկա», 1877, ևն), ջութակի («12 էտյուդներ» ևն) և այլ երկերի:

ՄԻՆՅԱՐ (Mignard) Պիեռ (1612–1695), ֆրանսիացի գեղանկարիչ: 1635–57–ին՝ Իտալիայում: Հեղինակ է Փարիզի Վալ դը Գրաս եկեղեցու գմբեթի որմնանկարների (1662–66), կրոն. և պատմ. թեմաներով կտավների («Ալեքսանդր Մակեդոնացու մեծահոգությունը», 1689), դիմանկարների (Մոլիերի, Ժ. Բոսյուեի, երկուսն էլ՝ 1691): 1690–ից՝ թագավորի առաջին նկարիչը:

ՄԻՆՆԵԶԻՆԳԵՐՆԵՐ (գերմ.՝ Minnesinger – սիրո երգիչ), գերմանացի բանաստեղծ-երգիչներ, հիմնականում՝ ասպետներ: Մ–ի արվ–ը ձևավորվել է XII դ–ում՝ պրովանսալ. տրուբադուրների ազդեցությամբ: Գովերգել են սերն առ կինը, Աստծուն և սյուզերենին ծառայելը (Վոլֆրամ ֆոն Էշենբախ, Հարթման ֆոն Աուե, Վալտեր ֆոն դեր Ֆոգելվեյդե, Ֆրաուենլոբ):

ՄԻՆՆՈՒԼԼԻՆ Թուֆան Աբդուլի (1935–2012), թաթար դրամատուրգ: Թաթարստանի ժող. գրող (2005): Հեղինակ է «Մեր գյուղի մարդիկ» (բեմ.՝ 1961), «Մեր ընտրած ճակատագրերը» (1972), «Այդեր-մեշցի ծեր գյուղացին» (բեմ.՝ 1976, ռուս.՝ «Սպիտակ ագռավ»), «Մայրեր և զավակներ» (1984) պիեսների, «Բախտիար Կանկաև» (1974) պատմ. դրամայի:

Թաթար. ԻԽՍՀ Մ. Ջալիլի անվ. (1974), ՌԽՖՍՀ (1979), Թաթար. ԻԽՍՀ (1979) Պետ. մրց–ներ:

ՄԻՆՈԳՆԵՐ, բոլորաբերանների դասի ստորակարգ ողնաշարավորների ենթադաս: Երկ.՝ 15–100 *սմ*: Հայտնի է ավելի քան 30 տեսակ՝ Հս. և Հվ. կիսագնդերի բարեխառն ջրերում: Բոլոր Մ. բազմանում են քաղցրահամ ջրերում: Բազմաթիվ տեսակներ խոշոր ձկների (այդ թվում՝ արտաքին) մակաբույծ են: Արդյունագործ. օբյեկտ է:


ՄԻՆՈՍ, Կնոսոսի առասպել. արքան, *Զևսի* և *Եվրոպայի* որդին հուն. դից–յան մեջ: Կրետեի 1–ին օրենսդիրը և ծով. հզոր տերության հիմնադիրը: Ըստ ավանդության՝ մահից հետո դարձել է դժոխքի 3 դատավորներից մեկը:

ՄԻՆՈՏԱՎՐՈՍ, մարդու մարմնով և ցուլի գլխով հրեշ հուն. դից–յան մեջ, որը ծնվել է Կրետեի *Մինոս* արքայի կնոջ՝ Պասիթեի, և Պոսեյդոնի ուղարկած սրբազան ցուլի զուգավորումից: Մինոսը Մ–ին բանտարկել է լաբիրինթոսում և իրեն ենթակա Աթենքին պարտադրել նրան կերակրելու համար պարբերաբար 7–ական երիտասարդ և աղջիկ զոհաբերել: Մ–ին սպանել է *Թեսևսը*:

ՄԻՆՈՏԻՍ Ալեքսիս (1900–1990), հույն դերասան, ռեժ.: 1932–ից՝ Աթենքի Ազգ. թատրոնի դերասան (Շայլոկ, Համլետ՝ Վ. Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը», «Համլետ», Օսվալդ՝ Հ. Իբսենի «Ուրվականներ», ևն), բեմադրել է Սոֆոկլեսի «Անտիգոնե», Եվրիպիդեսի «Մեդեա», Վ. Շեքսպիրի «Լիր արքա», «Ռիչարդ III», Ֆ. Դյուրենմաթի «Ծեր տիկնոջ այցը» և այլ գործեր: Նկարահանվել է կինոյում:

ՄԻՆՈՐ, 1. (մաթ.) **որոշիչ**, կազմված է տվյալ մատրիցի կամ որոշիչի այն տարրերից, որոնք տեղակայված են կամայական առանձնացված k տողերի և k սյուների հատման կետերում՝ կարգավորվածության պահպանմամբ:

2. (Երաժշտ.) **լադ**, հիմքում փոքր (մինոր) *եռահնչյուն*: Հակադիր է *մաժորին*, որը գեղ. կոնտրաստ ստեղծող միջոցներից է երաժշտության մեջ: Մ. դաս. տեսք է ստացել XVIII դ–ում (ֆունկցիոնալ հարմոնիայի դարում): XIX դ–ի կեսերից Մ–ի և մաժոր լադերի փոխներթափանցման հետևանքով առաջացել է մինորա–մաժոր համակարգը:



ՄԻՆՈՐՍԿԻ Վլադիմիր Ֆեոդորովիչ (1877–1966), ռուս արևելագետ: Հայտնի է մի շարք արևելագետների աշխ–ների (այդ թվում՝ Հ. Ա. Օրբելու և Ն. Մառի «1916 թ. հնագիտական արշավախումբ դեպի Վան») մասին գրախոսություններով: Գրել է նաև հուշեր Կոմիտասի մասին:

ՄԻՆՉԱՔԵՄԲԲ, երկրակեղևի հնագույն հատվածքները և նրանց առաջացմանը համապատասխանող ժամանակաշրջանը, որը կազմում է Երկրի երկրբ. պատմության մոտ 6/7 մասը: Տևողությունը՝ մոտ 3,5 մլրդ տարի: Ստորաբաժանվում է *արխեյան* (4–2,5 մլրդ տարի) և *պրոտերոզոյան* (2,5–0,541 մլրդ տարի) դարաշրջանների: Մ–ում է ծագել կյանքը, առաջացել թթվածնային մթն–ը, օրգ. ածխածինը կարբոնատ. նստվածքներում (3,5–4 մլրդ տարի առաջ): 2–2,5 մլրդ տարվա սահմանին հայտնվել են կենդանիների կենսագործունեության հետքերը, իսկ ուշ Մ–ում՝ նրանց առաջին մնացորդները: Մ–ի նստվածքների հետ են կապված ոսկու, երկաթի, պղնձի, մանգանի, ուրանի և բազմամետաղների հարուստ հանքավայրերը:

ՀՀ տարածքում Մ–ի ապարները (ամֆիբոլիտներ, բյուրեղ. թերթաքարեր, ֆիլիտներ, պորֆիրոիդներ) մերկանում են հիմնականում Ծաղկունյաց լ–շղթայի առանցք. գոտում՝ Արզական, Բջնի, Ապարան և Հալավար բնակավայրերի միջև՝ 500 *կմ²* տարածքի վրա:

ՄԻՆՍԿ, Բելառուսի մայրաքաղաքն ու համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,83 մլն (2010): Տրանսպորտ. հանգույց է, ունի օդանավակայան և մետրոպոլիտեն: Կան մեքենաշին. և մետաղամշակման (տրակտորներ, բեռնատար ավտոմեքենաներ, ավտոբուսներ, հաստոցներ, սառնարաններ, հեռուստացույցներ ևն), թեթև, սննդի, քիմիադեղագործ., քիմ. արդ–յան և այլ ճեռն–ներ: Գործում են բազմաթիվ բուհեր (այդ թվում՝ Բելառուսի համալսարանը, Երաժշտության ակադ–ը ևն), թատրոններ (Օպերայի և բալետի ևն) ու թանգարաններ (այդ թվում՝ ՀՄՊ–ի, Բելառուսի պատմության և մշակույթի, գեղարվ–ի ևն): Հայտնի է 1067–ից՝ Մենսեսկ անունով: 1793–ից՝ Ռուս. կայսրության կազմի մեջ: 1919–91–ին՝ Բելառուս. ԽՍՀ–ի մայրաքաղաքը:

1998–ին հիմնվել է «Էրեբունի» երգիպարի ազգագր. համույթը: 1999–ից գործում է հայկ. կիրակնօրյա դպրոց: 2009–ին Մ–ում ապրում էր շուրջ 2 հզ. հայ:

ՄԻՆՄԿԻ (Վիլենկին) Նիկոլայ Մաքսիմովիչ (1856–1937), ռուս գրող: Ռուս. սիմվոլիզմի հիմնադիրներից: 1914–ից՝ վտարանդի: Հեղինակ է «Խղճի լույսի ներքո» (1890), «Ապագայի կրոնը» (1905) աշխ–ների, որտեղ ներկայացված է Մ–ի կրոնափիլ. հայեցակարգը, «Խավարից դեպի լույս» (1922) բանաստեղծությունների ժող–ի, նաև դրամաների, թարգմ–յունների:

ՄԻՆՏԱՅՆԵՐ (Theragra chalcogramma), ձողաձկների ընտանիքի ձկների սեռ: Երկ.՝ մինչև 55 *սմ*, կ. զ.՝ մինչև 1,5 *կգ*: Հայտնի է 2 տեսակ՝ մեկը Խաղաղ օվկ–ի հս–արմ. մասում, մյուսը՝ Նորվեգ. ծովում: Արդյունագործ. ձուկ է:

ՄԻՆՑ Ալեքսանդր Լվովիչ (1894/95–1974), ռուս ռադիոտեխնիկ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1958): Սոց. աշխ. հերոս (1956): Ղեկավարել է հզոր ռադիոհաղորդիչ կայանների ստեղծման աշխ–ները, մասնակցել մի շարք արագացուցիչների (այդ թվում՝ Պրոտվինո ք–ում մինչև 70 ԳէՎ հզորությամբ) կառուցմանը:

ԽՍՀՄ Պետ. (1946, 1951), Լենինյան (1959) մրց–ներ:

ՄԻՆՑ Իսահակ Իզրաիլևիչ (1896–1991), հրեա պատմաբան: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1946): Սոց. աշխ. հերոս (1976): Աշխ–ները վերաբերում են ռուս. հեղ. շարժմանը:

ԽՍՀՄ Պետ. (1943, 1946), Լենինյան (1974) մրց–ներ:

ՄԻՆՑԼՈՎ Սերգեյ Ռուդոլֆովիչ (1870–1933), ռուս մատենագետ, գրող: 1917–ից՝ վտարանդի: Ունեցել է անվեգալ և արգելված ռուս. գրքերի հարուստ հավաքածու: Հեղինակ է պատմ. դրամաների, վեպերի, ակնարկների ժող–ի, մատենագիտ. աշխ–ների, այդ թվում՝ XVIII դ–ից մինչև 1907–ի ռուս. հուշագր. և նամակագր. գրկ–յան 1–ին հիմնարար մատենագիտ–յան:

ՄԻՇԵՐ (Miescher) Յոհան Ֆրիդրիխ (1844–1895), շվեյցարացի ֆիզիոլոգ, հյուսվածարան, կենսաբան: Առաջինն է հայտնագործել ԴՆԹ–ն: Անջատել է (1888) թարախից վերցրած լեյկոցիտների կորիզից, նյութ, որն սկզբում կոչվել է նուկլեին, իսկ հետագայում՝ *նուկլեինաթթու* (1899): Կատարել է սաղմոնի սերմնաբջիջներից վերցված նուկլեինի տարր. քիմ. վերլուծություն և հաստատել է նրա թթվային հատկությունները (1874):

ՄԻՇԻՆ Վասիլի Պավլովիչ (1917–2001), հրթիռատիեզ. տեխնիկայի բնագավառի ռուս կոնստրուկտոր, ռուս. գործն. տիեզերագնացության հիմնադիրներից: ՌԳԱ ակադ. (1966): Սոց. աշխ. հերոս (1956): Աշխ–ները վերաբերում են թռչող սարքերի և հեռավոր գործողության կառավարվող հրթիռների նախագծմանը: Լենինյան (1957), ԽՍՀՄ Պետ. (1984) մրց–ներ:

ՄԻՇԼԵ (Michelet) Ժյուլ (1798–1874), ֆրանսիացի պատմաբան: Շրջանառության մեջ է դրել «Վերածնունդ» («Ռենեսանս») տերմինը: Հեղինակ է «Ֆրանսիայի պատմություն» (մինչև 1789–ը, հ. 1–17, 1833–67), «Ֆրանսիական հեղափոխության պատմություն» (հ. 1–7, 1847–53) աշխ–ների:

ՄԻՇՆԱ (եբր.՝ կրկնություն, բանավոր ուսուցում), *Թալմուդի* հիմն. մասը, տրակտատների ժող., որտեղ շարադրված է բանավոր Թորան (իրավունքի ժող.): Ավանդության համաձայն՝ գրառումն

սկսվել է Երուսաղեմի տաճարի կործանումից հետո (70), շարունակել են գիտնականների (թանայներ) մի քանի սերունդներ: Մ. իր այժմյան տեսքով կազմվել և խմբագրվել է III դ–ի սկզբին:

ՄԻՇՈ (Michaux) Անրի (1899–1984), բելգիացի ֆրանսիագիր բանաստեղծ, նկարիչ: Հեղինակ է «Բարբարոսն Ասիայում» (1933) նոթերի գրքի, «Ներքին տարածություն» (1944), «Ոգու մեծ փորձություններ՝ անհաշիվ փոքրերի հավելմամբ» (1966), «Տեղափոխումներ, անցումներ» (1985) գրոտեսկ–ֆանտաստիկ արձակ բանաստեղծությունների, պատրանքային քնարերգության ժող–ների: Հայ. հրատարակվել է «Պլյում» (2007) բանաստեղծությունների ժող–ը:

ՄԻՇՉԵՆԿՈ Եվգենի Ֆրոլովիչ (1922–2010), ռուս մաթեմատիկոս: ՌԳԱ ակադ. (1984–ից): Աշխ–ները վերաբերում են դիֆերենցիալ հավասարումների, լավարկ. շարժընթացների տեսություններին:

Լենինյան մրց. (1962):

ՄԻՇՎԻԼՅԱՆ Ռոմանոս Հովհաննեսի (1845–1923), վիրաբույժ, հաս. գործիչ, ազնվական: Բժշկ. գիտ. դ–ր (1891): 1886–96–ին եղել է Ղզլարի զինվ. հոսպիտալի գլխ. բժիշկ, 1898–08–ին՝ պետ. խորհրդական: 1908–23–ին ղեկավարել է Ղզլարում իր նախաձեռնությամբ բացված հիվանդանոցը, միաժամանակ՝ հայկ. երկսեռ դպրոցների հոգաբարձու և օրիորդաց գիմնազիայի հոգաբարձուների խորհրդի նախագահ: Ղզլարի հայրենագիտ. թանգարանում Մ–ին հատկացված է անկյուն:

ՄԻՇՈՒՍՏԻՆ Եվգենի Նիկոլաևիչ (1901–1991), ռուս. մանրէաբան: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1974, թղթ. անդամ՝ 1953–ից): ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): Սոց. աշխ. հերոս (1981): Աշխ–ները վերաբերում են հողի մանրէաբանությանը, հող. միկրոֆլորայի տարածման, աշխարհագր. գոտիականության, մթն. ազոտի կենս. սևեռմանը:

ԽՍՀՄ Պետ. (1951, 1970, 1982), ԽՍՀՄ ԳԱ Ա. Ն. Վինոգրադովի անվ. մրց–ներ:

ՄԻՈ... (հուն.՝ mys, սեռ. հոլ.՝ myos – մկան), բարդ բառերի սկզբնամաս. օգտագործվում է մկաններին առնչվող եզրույթներ կազմելիս (օր.՝ միոկարդիտ՝ սրտամկանի բորբոքում):

ՄԻՈԳԼՈԲԻՆ (< *միո...* և լատ.՝ globus – գնդիկ), գլոբուլային սպիտակուց. մարդու և ողնաշարավոր կենդանիների մկաններում պաշարում է թթվածին: Մ–ով հատկապես հարուստ են ջրի տակ երկարատև մնացող ծով. կենդանիների մկանները: Մ. առաջին սպիտակուցն է, որի եռաչափ կառուցվածքը հաստատված է ռենտգենակառուցվածք. վերլուծության մեթոդով:

ՄԻՈԶԻՆ, մկանաթելերի սպիտակուց. ակտինի հետ կազմում է մկանների հիմն. կծկող. տարրը: Օժտված է կատալիզող ակտիվությամբ. ճեղքում է ԱԵՖ–ը՝ էներգիայի անջատմամբ, որն օգտագործվում է մկան. կծկումների ժամանակ:

ՄԻՈԿԱՐԴ, տես *Սրտամկան*:

ՄԻՈՄԱ, տես *Մկանային ուռուցք*:

ՄԻՈՊԱԹԻԱ, մկանների քրոնիկ. հարաճուն ժառանգ. հիվանդություն՝ պայմանավորված մկան. հյուսվածքում նյութափոխանակության խանգարմամբ: Բնորոշվում է մկան. թուլությամբ և մկանների ապաճումով:

ՄԻՈՌԵԼԱՔՍԱՆՏՆԵՐ, միջաձիգ զոլավոր մկանները թուլացնող դեղանյութեր: Ազդեցությունը կենտրոնական է (ընկճում է ԿՆՀ–ի միջաձիգ զոլավոր մկանների տոնուսը կարգավորող կառուցվածքները) կամ ծայրամաս. (տես *Կուրարենման դեղանյութեր*):

ՄԻՉԻԳԱՆ (Michigan), լիճ ԱՄՆ–ում՝ Մեծ լճերի համակարգում: Մակերեսը՝ 58 հզ. *կմ²*, աոլգն խոր.՝ 281 *մ*: Միացած է Հուրոն լճին Մաքինո նեղուցով, Միսիսիպիի համակարգին՝ Չիկագո–Լոկպորտ նավարկելի ջրանցքով: Խոշոր նվինգստ–ները՝ Չիկագո և Միլուոկի:

ՄԻՉԻԳԱՆ, նահց ԱՄՆ–ի հս–ում: Տարածքը՝ 251,5 հզ. *կմ²*, բն.՝ 9,9 մլն (2014): Վարչ. կենտրոնը՝ Լանսինգ:

ՄԻՉԻԳԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ԱՄՆ–ի խոշորագույն համալսարաններից, առաջատար ԳՀ կենտրոն: Հիմնադրվել է 1817–ին Դետրոյթ ք–ում, 1837–ին տեղափոխվել Էնն–Արբոր ք. (Միչիգան նահց): 2016–ին ուներ շուրջ 44 հզ. ուսանող:

ՄԻՉՈՒՐԻՆ Իվան Վլադիմիրովիչ (1855–1935), ռուս կենսաբան, ընտրասերում–նաբան, պտղատու, հատապտղատու և այլ մշակաբույսերի գիտ. ընտրասերման հիմնադիրը: ԽՍՀՄ ԳԱ պատվ. անդամ (1935), ՀամԳԳԱ ակադ. (1935): Աշակել է հատապտղատու մշակաբույսերի ընտրասերման մեթոդներ, մասնավորապես՝ հեռավոր խաչասերման մեթոդը:

ՄԻՋԱ, Միջաս, գվո Մոկք նահց–ում՝ Ձերմ գետի (Արլ. Տիգրիս) Կեցան (այժմ՝ Քեսան) վտակի ստորին հոսանքի շրջանում: Կենտրոնն էր Միջա ավանը (այժմ՝ գյուղ): Համապատասխանել է Բիթլիսի նահց–ի Մարմտանք գվո–ին:

ՄԻՋԱԳԵՏՔ, բնամարզ Արմ. Ասիայում՝ Տիգրիս և Եփրատ գետերի ավազանում: Հին Արևելքի խոշոր մշակութ. կենտրոններից էր: Ընդգրկել է Միջագետքի հարթավայրը և Ձեզիրե սարավանդը: Մ–ի Մասիոս լ–պարից հս ընկած երկրամասը հայ մատենագիտ–յան մեջ կոչվել է Միջագետք Հայոց:

Մ. թ. ա. I դ–ում Մ–ի զգալի մասը եղել է հայկ. պետականության կազմում՝ գրեթե միատարր հայ բնակչությամբ: XII դ–ի կեսին, Մ–ում հայկ. իշխանությունների անկումից հետո, Մ. շարունակել է մնալ որպես հայերի տնտ. և մշակութ. կենտրոն: Հայերի մեծ մասը բնաջնջվել է 1915–20–ին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԺՇԿԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ, միջազգային սանիտարական համաձայնագրի, պետությունների միջև կնքվող իրավ. փաստաթղթեր, որոնցով կարգավորվում են մի շարք վտանգավոր հիվանդությունների սան–կարանտին. միջոցառումները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԵՏԵՐ, 2 կամ ավելի պետությունների տարածքներով հոսող կամ սահման. նավարկելի գետեր: Մ. գ. են Դանուբը, Հռենոսը, Կոնգոն, Նիգերը, Ամազոնը, Լա Պլատան, Մեկոնգը, Արաքսը ևն: Մ. գ. տնտ. և այլ նպատակներով օգտագործելու հարցերը, որպես կանոն, կարգավորվում են առափնյա պետությունների միջև կնքված համաձայնագրերով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՆ, համապատասխան ապրանք. արտադրանքի հայտնի ներմուծող–արտահանող ընկ–ների՝ միջազգ. առևտրի հիմն. կենտրոններում սովոր. առևտրային պայմաններով կնքված գործարքի գինը: Համաշխ. շուկայում պարբերաբար հրապարակվում են Մ. գ–ների տեղեկատու, արտաքին առևտրի վիճակագր., բորսայական գնորոշման, փաստացի գործարքների ու պայմանագրային գները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ (International Council for Science, ICSU), ոչ պետ. գիտ. կազմ–յուն, միավորում է բնական և ճշգրիտ գիտ–յունների բնագավառների ազգ–գիտ. հաստատություններ, գիտ. միությունները, կոմիտեները և ընկերակցությունները: Ստեղծվել է 1931–ին՝ որպես Գիտ. միությունների միջազգ. խորհուրդ (1998–ից՝ Մ. գ. խ.)՝ Ակադ–ների միջազգ. ընկերակցության (1899–1914) և Միջազգ. գիտ. խորհուրդների (1919–31) ավանդույթների զարգացման ու ընդլայնման նպատակով: Կենտրոնատեղին՝ Փարիզում: Ընդգրկում է 113 երկրի 117 ազգ. գիտ. կազմ–յուններ և 30 միջազգ. գիտ. միություններ, այդ թվում՝ Աստղագիտ–յան (հիմն.՝ 1919), Գեոդեզիական և երկրաֆիզիկայի (1919), Գիտ. ռադիոմիության (1919), Տես. և կիրառ. քիմիայի (1919), Մաթ–ի (1920), Տես. և կիրառ. ֆիզիկայի (1922), Աշխարհագրության (1922), Հողագիտ–յան (1924), Տես. և կիրառ. կենսաֆիզիկայի (1946), Բնապահպանության և բնական պաշարների (1948), Հոգեբ. գիտ–յունների (1951), Կենսաքիմիայի (1955), Պատմ. և փիլ. գիտ–յունների (1956), Երկրբ. գիտ–յունների (1961), Տես. և կիրառ. մեխանիկայի (1961) և այլ միջազգ. միություններ: 1992–ից Մ. գ. խ–ին անդամակցում է նաև ՀՀ ԳԱԱ–ն:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՁԵՐՄԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿ (ՄԳՁՍ), չափերի և կշիռների գլխ. համաժողովի ընդունած ջերմաստիճան. սանդղակ. նախատեսված է ջերմաստիճանի գործն. չափման համար: 1968–ին ընդունված ՄԳՁՍ–68–ը հիմնված էր նախապես չափված 11 ջերմաստիճան. կետերի վրա: 1990–ին ընդունվել է Միջազգ. ջերմաստիճան. սանդղակ՝ ՄՁՍ–90–ը, որը հիմնված է 17 ջերմաստիճան. կետերի վրա: ՄՁՍ–90–ում տարբերում են Կելվինի միջազգ. ջերմաստճան (T_{90}) և Ցելսիուսի միջազգ. գործն. ջերմաստիճան (t_{90}): $t_{90} = T_{90} - 273{,}15$K: $1^{o}C = 1$K: ՄՁՍ–90–ով սահմանված են 0,65 Կ–ից մինչև այն բարձրագույն ջերմաստիճանները, որոնք կարելի է չափել *Պլանկի ճառագայթման օրենքով*՝ մոնոներանգ ճառագայթման օգտագործմամբ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ (International Music Council), ՅՈՒՆԵՍԿՕ–ին կից կազմ–յուն: Հիմնադրվել է 1949–ին Փարիզում: Կազմում՝ 64 երկրի (2010) կոմիտեներ, միջազգ. երաժշտ. կազմ–յուններ: Համակարգում է դրանց գործունեությունը, անցկացնում վեհաժողովներ, մրցույթներ, փառատոներ: 1957–ից հրատարկում է «Երաժշտության աշխարհ» (անգլ.) ամսագիրը, սահմանել Երաժշտության միջազգ. օր (1973–ից, նշվում է հոկտ. 1–ին):

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ, միջազգ. իրավունքի նորմերի և պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ: Հնում և միջնադարում միջազգ. երաշխիքներ էին թագավորի կամ նրա լիազորած անձի երդումը, պատանդներ վերցնելը, թանկարժեք իրեր կամ տարածք գրավ դնելը ևն: XIX դ–ից սկսած, որպես Մ. ե., կիրառվում է տարածքի զավթումը: Ներկայում Մ. ե–ի հիմն. ձևը մի քանի պետությունների միջև կնքվող երաշխիքային պայմանագիրն է:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ՏԱՐԻ, 1957–ի հուլիսի 1–ից մինչև 1958–ի դեկտ. 31–ն ընկած ժամանակահատվածը

(18 ամիս), որի ընթացքում 67 պետություններ ամբողջ երկրագնդի տարածքում միասն. ծրագրով և եղանակով կատարել են երկրաֆիզ. դիտարկումներ և հետազոտություններ: Ուսումնասիրվել են մթն–ի վերին շերտերը՝ բևեռափայլը, երկնաքարերը, տիեզ. ճառագայթները, բացահայտվել են Երկրի ճառագայթ. գոտիները, Անտարկտիդայում հայտնաբերվել է ցրտի Հվ. բևեռը ևն:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԲԱՐՈՒԹՅՈՒՆ, միջպետ. վեճերը կարգավորելու միջոց, որի դեպքում կողմերը դիմում են երրորդ անձանց՝ իրավաբարների կամ միջնորդ դատավորների: Տարբերում են կամավոր և պարտադիր Մ. ի.: Իրավաբարությունը, որպես միջազգ. վեճերը խաղաղ կարգավորելու միջոց, նախատեսված է ՄԱԿ–ի կանոնադրությամբ (հոդված 33) և երկկողմ կամ բազմակողմ պայմանագրերով: 1919–20–ի Փարիզի խաղաղության համաժողովում դաշնակից երկրների ԳԽ–ի, ապա՝ Սևրի հաշտությունը կնքող պետությունների որոշմամբ ԱՄՆ նախագահ Վ. *Վիլսոնին* էր հանձնվել հայ–թուրք. սահմանի որոշումը (տես *Վիլսոնի իրավաբարական ռեժիմ*):

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ, միջազգ. ՀԿ: Հիմնադրվել է 1873–ին Բրյուսելում: «Մ. ի. ա.» անվանումն օգտագործվում է 1895–ից: Ուսումնասիրում, մեկնաբանում և զարգացնում է միջազգ. հանր. ու մասնավոր իրավունքները՝ օրենքների հակասությունները վերացնելու և միասնականություն հաստատելու համար, նպաստում է փոխըմբռնմանն ու բարի կամքի զարգացմանը: Ունի խորհրդատվ. կարգավիճակ ՄԱԿ–ի Տնտ. ու սոցալ. խորհրդում և ՅՈՒՆԵՍԿՕ–ում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒՆԵՐ, տարբեր պետությունների ժողդ–ների հաղորդակցման լեզուներ: Ստորաբաժանվում են բնական (որոնց համար Մ. լ–ի գործառույթն իրական է, բայց երկրորդային իրենց՝ ազգ. կամ էթնիկ. լեզվի դերում հիմնական օգտագործման առումով) և արհեստ. (որոնց համար Մ. լ–ի գործառույթն առաջնային է, մինչդեռ նրանցից ոչ բոլորն են կիրառվում միջլեզվային շփումներում) լեզուների: Տես նաև *Աշխարհի լեզուներ*:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐԻ ՊՏՈՒՏՅԻ (ՄԾԵՊ, International Esrth Rotation Service, IERS), Երկրի պտտման հարաչափերի (աշխարհագր. բևեռների դիրքեր, օրերի տևողություններ ևն) փոփոխություններ արձանագրող միջազգ. ծառայություն: ՄԾԵՊ–ի աշխ–ներին մասնակցում են տարբեր երկրների աստղադիտարաններ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՈՎԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ, միջազգ. իրավունքի ճյուղ. կարգավորում է Համաշխ. օվկ–ի օգտագործման հետ կապված պետությունների հարաբերություններն առևտրի և ռազմ. ծովագնացության, ձկնորսության, ծով. պաշարների օգտագործման, գիտ–յան բնագավառում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, պետությունների կամ ազգ. հաս. ընկ–ների (ասոցիացիաներ) միավորումներ՝ քաղ., տնտ., սոցիալ., գիտատեխ., մշակութ. և այլ բնագավառներում ընդհ. նպատակների իրագործման համար. պետությունների միջև համագործակցության կարևորագույն ձևերից: Որոշ Մ. կ–ի անդամ կարող են լինել միայն պետությունները (միջկառավար. Մ. կ.):

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ, միջազգ. ՀԿ. միավորում է Կարմիր խաչի ընկ–ների լիգան (ԿԽԸԼ), Կարմիր խաչի միջազգ. կոմիտեն (ԿԽՄԿ) և Կարմիր խաչի ազգ. ընկ–ները (ԿԽԱԸ, հիմն.՝ 1919): Վերջինի մեջ մտնում են Կարմիր խաչի, Կարմիր մահիկի, Առյուծի և Արևի ազգ. ընկ–ները): ԿԽՄԿ (հիմն.՝ 1863, կազմված է Շվեյցարիայի քաղաքացիներից), որպես չեզոք միջնորդ, ցուցաբերում է մարդասիր. օգնություն զինված ընդհարումների ժամանակ: Նստավայրը՝ Ժնևում: Մ. կ. խ–ին անդամակցում է նաև Հայաստանի Կարմիր խաչի ընկ–ը (հիմն.՝ 1921): Խաղաղության Նորելյան մրց. (1917, 1944, 1963):

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՄԿԾ), էկոհամակարգերի կենսարդյունավետության հետազոտությունների, բնության պահպանության, կյանքի տարբեր պայմաններին մարդու հարմարվելու հիմնախնդիրների համալիր: Իրականացվել է 1964–74–ին: ՄԿԾ–ին մասնակցել է 58 երկիր և 30 երկրի առանձին գիտնականներ: ՄԿԾ–ին հաջորդել է «Մարդը և կենսոլորտը» ծրագիրը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈՓԱՆԱՏՈՆ, կինոարվ–ի ստեղծագործությունների (գեղ., փաստագր., վավերագր., մուլտիպլիկացիոն, հեռուստատես. ևն) դիտում, որոնց տրվում են մրց–ներ, դիպլոմներ ևն: Հայտնի են Կաննի (1946–ից), Վենետիկի (1932–ից), Բեռլինի (1951–ից), Մոսկվայի (1935–ից), Սան Սեբաստիայի (1953–ից), Կառլովի Վարիի (1950–ից), նաև Մոնակոյի, Սան Ֆրանցիսկոյի, Երևանի («Ոսկե ծիրան», 2004–ից) և այլ միջազգ. կփ–եր:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԱԼՅԱՆՍ, միավորում է կոոպերատիվների ազգ. ու տարածաշրջ. միությունները: Հիմնադրվել է 1895–ին: Նպատակը կոոպերատիվ շարժման զարգացումն է, տարբեր երկրների կոոպերատիվ կազմ–յունների համագործակցությունը: Ներառում է 100 երկիր (2016): Կենտրոնատեղին՝ Բրյուսելում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ ՀԱՆՁՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՄ, միջազգ. վտանգավորության հանցագործությունների տեսակն ու պատժամիջոցների համակարգը նախատեսող միջազգ. համաձայնագրեր:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՆԵՐՈՒՄ (Amnesty International), միջազգ. ՀԿ: Ստեղծվել է 1961–ին՝ մարդու իրավունքների պաշտպ–յան նպատակով (քաղ., կրոն., ռասայական և այլ շարժառիթներով ձերբակալված անձանց համար արդար և անհապաղ դատաքննություն, մահապատժի վերացում ևն): 1964–ին ՄԱԿ–ից ստացել է խորհրդատվականի կարգավիճակ:

Խաղաղության Նորելյան մրց. (1977):

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԲԱՆԿ (ՄՀԲ), միջազգ. արժութավարկ. կազմ–յուն: Հիմնադրվել է 1930–ին Բազելում՝ ԱՀՊ–ի ավարտից հետո Գերմանիային վերականգնման վճարումների և միջդաշնակցային պարտքերի գծով հաշվարկների համար: 1960–ական թթ–ի սկզբից ՄՀԲ համակարգում է անդամ երկրների արժութաֆին. քաղ–յունը, որպես գործակալ է հանդես գալիս տարբեր միջազգ. կազմ–յունների համար: 1986–ից գործում է որպես միջբանկ. գործառնությունների քլիրինգային պալատ: Բանկին անդամակցում են եվրոպ. երկրների մեծ մասի, ինչպես նաև ԱՄՆ–ի, Կանադայի ու Ճապոնիայի կենտր. բանկերը:

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱԲԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ», քաղ. և տնտ., գիտավերլուծ., տեղեկատվ. հանդես (2010–ից, Երևան): Խմբ.՝ Արթուր Ղարագյոզյան:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ, ազգ. ճարտարագիտ. ակադ–ների գործունեությունը համակարգող, աշխ–ի արդյունավետության բարձրացմանը նպաստող կազմ–յուն: Ստեղծվել է 1992–ին: 2016–ին ուներ 40 երկրների 1300 անդամ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՄՆԱՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔ, իրավունքի նորմերի ամբողջություն, որով կարգավորվում են միջազգ. բնույթի քաղաքացիաիրավ. հարաբերություններ (գույքային, դրան առնչվող ոչ գույքային, ինչպես նաև ընտանեկան, աշխ. և դատավար. իրավահարաբերություններ): Մասնակիցներն արտասահմանցիներ են, արտերկրի իրավաբ. անձինք ու պետություններ, իրավահարաբերությունների օբյեկտը՝ արտասահմանում գտնվող գույքը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐ, արտերկրում ակտիվներ ունեցող մասնավոր խոշոր ֆիրմաներ կամ ազգ. ֆիրմաների միություններ, որոնք գերիշխում են համաշխ. տնտ–յան մեկ կամ մի քանի ոլորտներում: Տարբերում են Մ. մ–ի 2 խումբ՝ արտերկրի ակտիվներով ազգ. տրեստներ ու կոնցեռններ (վերազգ. մենաշնորհներ) և բուն Մ. մ.: Վերջինները ներառում են ինչպես սեփականության բաժնետիր. ձևի վրա հիմնված միջազգ. տրեստներն ու կոնցեռնները, այնպես էլ միջֆիրմային միությունները՝ կարտելներն ու սինդիկատները (արտադր. ու գիտատեխ. հիմքով մենաշնորհ. միավորումները): Ի տարբերություն վերազգ. մենաշնորհների՝ միջազգ. տրեստներն ու կոնցեռնները տնօրինում են ոչ թե մեկ, այլ մի քանի պետությունների լիազոր ներկայացուցիչները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՂՈՒՑՆԵՐ, համաշխ. ջր. ուղիների նշանակություն ունեցող այն նեղուցները, որոնք միացնում են բաց ծովերը: Մ. ն. են Բոսֆորի և Դարդանելի, Ջիբրալթարի, Մագելանի, Սանգայի, Կորեական նեղուցները ևն: Ռեժիմի հիմքում դրված է բաց ծովերի ազատության սկզբունքը: Ներքին ծովը փակ կամ բաց ծովի հետ միացնող նեղուցների ռեժիմը կարգավորվում է ներքին ջրերի ռեժիմով (օր.՝ Կերչի նեղուցը): Հատուկ իրավ. ռեժիմ է սահմանված փակ ծովերը բաց ծովերի հետ միացնող նեղուցների համար:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿ, միջազգ. միջպետ. կազմ–յուն, որն աջակցում է մասնակից երկրների սոցիալ–տնտ. զարգացմանը, բնակչության բարեկեցության բարձրացմանը, տնտ. կոոպերացմանը: Հիմնադրվել է 1970–ին: Անդամներն են՝ Բուլղարիան, Ռումինիան, Սլովակիան, Հունգարիան, Չեխիան, Մոնղոլիան, Կուբան, ՌԴ–ն, Վիետնամը: Գործունեության հիմն. ուղղությունները՝ անդամ երկրներում փոքր և միջին բիզնեսին աջակցությունը, սոցիալապես նշանակալի ենթակառուցվածք. նախագծերի ֆինանսավորման մասնակցությունը: Սեփ. միջոցները 2016–ին

կազմել են 375 մլն եվրո, վճարված կապիտալը՝ 313 մլն եվրո: Կենտրոնատեղին՝ Մոսկվայում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՋՐԱԲԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ, ազգ., տարածաշրջ. և համաշխ. ծրագրերով ջր. հաշվեկշռի ուսումնասիրությունների և ջր. պաշարների գնահատման համալիր: Իրականացվում է 1975–ից՝ որպես Միջազգ. ջրաբան. տասնամյակի շարունակություն՝ ավելի քան 100 երկրների գիտնականների մասնակցությամբ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՋՐԱՆՑՔՆԵՐ, ծովերը միացնող և միջազգ. նավարկության համար օգտագործվող ջր. արհեստ. ուղիներ (Քիլի, Սուեզի, Պանամայի ջրանցքները ևն): Ծով. նավարկության ուղիները կրճատելու շնորհիվ խոշոր դեր են խաղում միջազգ. ծով. առևտրում ու ծովագնացության մեջ: Համարվում են այն պետության տարածքի անբաժանելի մասը, որով անցնում են, ենթարկվում են տվյալ պետության իրավասությանը՝ հաշվի առնելով դրանց միջազգ. իրավ. ռեժիմը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՈՎՈՐՈՒԹՅՈՒՆ, նորմեր, որոնք ձևավորվել են պետությունների միջազգ. պրակտիկայում երկարատև կրկնվելու հետևանքով: Իրավաբ. ուժ են ձեռք բերում պետությունների ճանաչելուց հետո և դառնում միջազգ. իրավունքի աղբյուր:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿ, միջազգ. տնտ. հարաբերությունների ոլորտում փոխատվ. կապիտալի շարժ, որը կապված է վերադարձելիության, ժամկետայնության, ապահովվածության ու տոկոսների վճարման պայմաններով արժութ. ու ապրանք. պաշարների տրամադրման հետ: Մ. վ–ի գործառույթներն են երկրների միջև փոխատվ. կապիտալի վերաբաշխումը, միջազգ. հաշվարկների ոլորտում շրջանառության ծախքերի տնտեսումը, կապիտալի համակենտրոնացման ու կենտրոնացման արագացումը, տնտ–յան կարգավորումը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, հիմնադրվել է 1885–ին Հաագայում՝ վիճակագր. մեթոդների կատարելագործման և նրանց կիրառումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով: Ունի խորհրդատվ. կարգավիճակ ՄԱԿ–ի Տնտ. ու սոցիալ. խորհրդում և ՅՈՒՆԵՍԿՕ–ում: Մ. վ. ի–ին անդամակցում են վիճակագր. տարբեր ինստ–ներ, կազմ–յուններ, ընկ–ներ, նաև անհատ գիտնականներ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆՅԱՆ, միջազգ. օդաչուավոր ուղեծր. տիեզ. սարք, որն օգտագործում են որպես բազմանպատակ հետազոտ. կայան (ուղեծրի բարձր.՝ 410–460 *կմ*, թեքվածությունը՝ 51,6°): Մ. տ. ունի մոդուլ. կառուցվածք. այն հավաքվում է համալիրի՝ ուղեծիր հասցնող հերթական մոդուլի (բլոկի) միացումներով: Առաջին մոդուլը՝ «Զարյան» (Ռուսաստան), ուղեծիր է դուրս բերվել 20.11.1998–ին: Ըստ միջազգ. համաձայնության՝ Մ. տ. բաղկացած էր 2 ինտեգրվող սեգմենտներից՝ ռուս. (մինչև 2009–ը ներառում էր «Զարյա», «Զվեզդա» մոդուլները և «Պիրս», ՄԻՄ–2 կցվող մոդուլները) և ամերիկ. [«Unity», «Destiny», «Qest» շլյուզային խուցը, «Harmony», «Kibo» (Ճապոնիա), «Columbos» (Եվրոպ. տիեզ. գործակալություն՝ ԵՏԳ) միացվող և կցվող մոդուլները]: Մ. տ. ապահովում է 6 մարդուց բաղկացած անձնակազմի կենսագործունեությունը (2009): Աշխ. վիճակում Մ. տ–ի չափերն են՝ 109 x 8 x 38 *մ*, հերմետիկ բաժանմունքների ծավալը՝ 1140 *մ*^{3}, զանգվածը՝ 455 *տ*: Նախագծի մասնակից երկրներն էին ԱՄՆ–ն, Կանադան, Ճապոնիան, Ռուսաստանը և ԵՏԳ անդամ երկրները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ (International Cartographic Association), հիմնադրվել է 1959–ին՝ քարտեզագր. գիտ–յանն ու արտադր–յանն աջակցելու, քարտեզագր. հետազոտությունների կատարման ու համակարգման, տարբեր երկրների գիտնականների համագործակցության, ինչպես նաև քարտեզագր. կարևոր հարցերի քննարկման, միջազգ. համաժողովների, գիտաժողովների, ցուցահանդեսների կազմակերպման և քարտեզագրության նորագույն նվաճումներին ծանոթացնելու համար: Անդամակցում է 80 երկիր (2009):

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ (ՄՕԿ), ժամանակակից օլիմպ. շարժման բարձրագույն մշտ. գործող մարմին: Կազմակերպում և իրականացնում է օլիմպ. խաղերը: Ստեղծվել է 1894–ին՝ Պ. դը *Կուբերտենի* նախաձեռնությամբ: ՄՕԿ–ը ճանաչել են 205 ազգ. օլիմպ. կոմիտեներ (2015): Կենտրոնատեղին՝ Լոզանում (Շվեյցարիա):

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ (The Institute of International Finance, Inc.), ԳՀ, խորհրդատվ. ու տեղեկատվ. միջբանկ. կենտրոն, որն ստեղծել են արմ. խոշորագույն բանկերը 1983–ին: Անդամակցում են ավելի քան 180 մասնավոր բանկեր: Կենտրոնատեղին՝ Վաշինգտոնում: Վերլուծում է զարգացող երկրների վճարունակությունը, մշակում միջազգ. վարկի միասն. կանոններ, ներկայացնում բանկերի շահերը միջազգ. արժութաֆինն. հարցերի լուծման ժամանակ:

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՈՒՂԵՂ, գլխուղեղի բնի մաս, որն ընդգրկում է տեսաթմբերը (թալամուս), հետտեսաթմբ. մասը (մետաթալամուս), ենթատեսաթումբը (հիպոթալամուս), մակատեսաթումբը (էպիթալամուս) ևն:

ՄԻՋԱՍՏՂԱՅԻՆ ԿԼԱՆՈՒՄ, երկն. մարմինների ճառագայթման թուլացում՝ միջաստղ. տարածության մեջ նրա կլանման, *դիֆրակցիայի* և ցրման հետևանքով: Մ. կ–ման մեծությունը տարբեր ուղղություններով տարբեր է (տիեզ. փոշու անհավասարաչափ բաշխում ևն): Մ. կ–ման հետևանքով հեռավոր աստղերի լույսն այնքան է թուլանում, որ դրանք հաճախ դառնում են անտեսանելի:

ՄԻՋԱՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, էնտոմոլոգիա (< հուն. entoma – միջատ և ... *լոգիա*), կենդբ–յան բաժին, որն ուսումնասիրում է *միջատները*:

ՄԻՋԱՏԱՋԵՐԾՈՒՄ, *դեզինսեկցիա* (< *դե*..., *դեզ*... և լատ.՝ ensectum – միջատ), հիվանդություններ փոխանցող վնասակար հոդվածոտանիների (մոծակներ, ճանճեր, ոջիլներ, տզեր ևն), գղտ. վնասատուների դեմ պայքարի մեթոդներ և միջոցներ:

ՄԻՋԱՏԱԿԵՐ ԲՈՒՅՍԵՐ (Planta carnivora), բույսեր, բազմամյա ցամաք. և ջր. թփեր, թփիկներ, լիաններ, որոնք որսում են մանր միջատներ (հազվադեպ՝ այլ մանր կենդանիներ) և օգտագործում որպես լրացուցիչ (գլխավորապես՝ ազոտային) սնունդ: Հայտնի է մոտ 500 տեսակ՝ բոլոր աշխարհամասերում, ՀՀ–ում՝ 3: Առավել հայտնի են ցողիկը, վեներայի ճանճորսը, ճարպախոտը, ցնցղենին, խորշաբույսը ևն:

ՄԻՋԱՏԱԿԵՐՆԵՐ (Eulipotyphla), կաթնասունների կարգ. ամենահին և պարզունակ ընկերքավոր կաթնասունների խումբ, որից ծագել են կաթնասունների բազմաթիվ կարգեր (կրծողներ, պրիմատներ ևն): Մարմնի երկ.՝ 3–45 *սմ*: Հայտնի է 7–8 ընտանիք, մոտ 300 տեսակ՝ տարածված լայնորեն (բացի Ավստրալիայից և Հվ. Ամերիկայի մեծ մասից), ՀՀ–ում՝ 3 ընտանիք, 12 տեսակ (*ոզնիներ, խլուրդներ, սրընչակներ* ևն): 8 տեսակ գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում: Օգտակար են. ոչնչացնում են վնասատու միջատներին:

ՄԻՋԱՏԱՄՊԱՆՆԵՐ, *ինսեկտիցիդներ* (< լատ. insectum – միջատ, caedare – սպանել), միջատների դեմ պայքարի քիմ. միջոցներ, պեստիցիդներ: Հիմնականում օրգ. միացություններ են, այդ թվում՝ բուս. ծագման թունավոր նյութերի սինթետիկ նմանակներ: Կիրառում են հատիկավոր պատրաստուկները հող ներմուծելով, բույսերը աշխ. հեղուկներով սրսկելով, փակ տարածքներում սերմերի ախտահանումով և տնկանյութի մշակմամբ: Կենդանիներին մշակում են հիմնականում սրսկումներով, փոշեհարումներով, հատուկ գուռերում լողացնելով, որոշ Մ. ներարկում են:

ՄԻՋԱՏՆԵՐ (Insecta), հոդվածոտանիների տիպի անողնաշարների դաս: Մարմինը հատվածավոր է՝ կազմված 3 բաժնից՝ գլուխ, կուրծք և փորիկ: Ունեն 3 զույգ ոտքեր, մեծամասնությունը՝ թևեր: Շնչում են տրաքեաներով: Որպես կանոն՝ զարգանում են կերպարանափոխությամբ՝ ձու, թրթուր, հարսնյակ (նիմֆա), հասուն Մ.: Ամենաբազմաքանակ և բազմատեսակ խումբն է Երկրի վրա: Հայտնի է մոտ 1 մլն տեսակ, որոշ տվյալներով՝ ավելի շատ (հավանաբար՝ 1,5–2 մլն և ավելի), ՀՀ–ում՝ 14–15 հզ. տեսակ: Ըստ տարբեր համակարգերի՝ կարգերի թիվը 30–40 է: Բազմաթիվ Մ. անտառ. և գեղազարդիչ բույսերի, հացահատիկի և պահեստաբանների այլ սննդամթերքների վնասատուներ են, մարդու և կենդանիների հիվանդությունների փոխանցողներ: Կան նաև օգտ. տեսակներ, որոնք մասնակցում են բույսերի փոշոտմանը, տալիս են արժեքավոր սննդամթերք և տեխ. հումք (մեղր, մեղրամոմ, մետաքս), ոչնչացնում են գղտ վնասատուներին (օր.՝ հեծյալներին): Շատ տեսակների (հատկապես՝ թիթեռների) թվաքանակը կրճատվում է: Ավելի քան 200 տեսակ պահպանվում է: Մ. ուսումնասիրում է *միջատաբանությունը*:

ՄԻՋԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՐՏԱՐԿՈՒՄ մաթեմատիկայում և վիճակագրության մեջ, որևէ մեծության մի քանի արժեքներով միջանկյալ արժեքները գտնելու խնդիրը: Օր.՝ հատվածի $x_0 < x_1 < ... < x_n$ կետերում (հանգույցներում) $y_i = f(x_i)$ ֆունկցիայի տրված $y_1, y_2, ...y_n$ արժեքների միջոցով մյուս x կետերում f (x) արժեքների գտնելը: Եթե x–ը (x_0, x_n) միջակայքում է, ապա խնդիրն անվանում են միջարկման, իսկ եթե միջակայքից դուրս է՝ արտարկման:

ՄԻՋԲԱԶԱՅԻՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, կենսընթացներ, որոնք ապահովում են հյուսվածքների ձևավորումը և նրանց ֆունկցիաների ինտեգրման համար անհրաժեշտ տեղեկույթի փոխա–

նակությունը բջիջների միջև: Ուսումնասիրված են առավելապես կենդանիների Մ. փ.: Տարբերում են շփումային և հումորալ–միջնորդավորված Մ. փ.: Առաջիններն իրականանում են բջիջների կպչումը (ադհեզիա) ապահովող մակերևութ. սպիտակուցների (կոմպլեմենտար կամ նույնական) մասնակցությամբ: Երկրորդները պայմանավորված են բջիջների արտազատած քիմ. նյութերով (միջնորդանյութեր, հորմոններ, ցիտոկիններ ևն):

ՄԻՋԳԱԼԱԿՏԻԿԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ, չափազանց նոսր, անհամասեռ խտությամբ և ջերմաստիճանով միջավայր, որի հիմն. բաղադրիչը 100 հգ–ից մինչև տասնյակ մլն Կելվին ջերմաստիճանի ամբողջովին իոնացված գազն է (հիմնականում՝ ջրածին և հելիում): Գազի խտ.՝ 100–1000 *մասնիկ/մ*^{3}: Մ. մ–ի կազմում են նաև ֆոնային՝ *մնացուկային ճառագայթումը*, գալակտիկաների ճառագայթումները, նեյտրինոների, բարձր էներգիայի պրոտոնների և այլ մասնիկների հոսքերը:

ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎԱՅԻՆ ԿԼԻՄԱ, մերձարևադարձ. կլիմայի տիպ՝ չոր շոգ ամառով և անձրևոտ տաք ձմեռով: Հատուկ է Միջերկրածովայքի երկրներին, Ղրիմի հվ–ին և Կովկասի սևծով. ափերին:

ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎԱՅՔ, բնական տարածք. ներառում է Միջերկր. ծովի կղզիները և թ–կղզիներն ու նրանց հարող Եվրասիայի և Հս. Աֆրիկայի տարածքները: Կլիման միջերկրածովային է, գետերը ջրառատ են ձմռանը, ամռանը մի մասը չորանում է: Բուսականությունը՝ չորասեր թփուտներ ու անտառներ: Մշակում են հացահատիկ, եգիպտացորեն, ցիտրուսայիններ, ձիթապտուղ, խաղողենի, բանջարարույսեր, զարգացած է ձկնորսությունը: Կան բազմաթիվ հանգստավայրեր և առողջարաններ:

ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ԲԱԶԵ (Falco biarmicus), *բազեների* ընտանիքի թռչուն: Մարմնի երկ.՝ 34–50, թևերի բացվածքը՝ 90–115 *սմ*: Թռիչքն արագ է, ուղիղ՝ թևերի ոչ խորը թափահարումներով: Զոհին բռնում է օդում: Օգտակար է. ոչնչացնում է միջատներին:

ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ԵՐԱՇՏԱՀԱՎ (Parus lugubris), երաշտահավերի ընտանիքի թռչուն: Նստակյաց է, քիչ տարածված: ՀՀ–ում 1–ին անգամ հայտնաբերվել է 1960–ական թթ–ին: Մարմնի երկ.՝ 14, թևերի բացվածքը՝ 21,5–23 *սմ*: Երգում է՝ նույն տեղում նստած: Բնադրում է արհեստ. թռչնաբներում և գիհու փչակներում: Մնվում է անողնաշարներով: Որպես հազվագյուտ տեսակ՝ կարիք ունի հատուկ պաշտպ–յան:

ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ԼԵՋՈՒՆԵՐ, Հվ. Եվրոպայի և Միջերկր. ծովի կղզիների ոչ հնդեվրոպ. հին լեզուների, որոնց ցեղակց. կապերը բացահայտված չեն, պայման. անվանումը: Մ. լ–ից միակ կենդանի լեզուն *բասկերենն* է: Հուշարձանները (մ. թ. ա. III հզ–ամյակի կես–մ. թ. I դ.), ձեռագրերն ու գլոսսաներն ունեն գրի 3 տեսակ՝ հիերոգլիֆ., վանկ., տառ.: Լավագույն վավերագրված Մ. լ–ից է *Լիրուսկերենը*:

ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ԿԻՒ, (Testado graeca), **հունական կրիա**, ցամաք. կրիաների ընտանիքի սողուն: Զրահի երկ–յունը տարիքի հետ փոխվում է (3,5–3,0 *սմ*): Պահպանության նպատակով խնամվում և բազմացվում է նաև անազատ պայմաններում: Օգտագործվում է ԳՀ նպատակներով, միսն ու ձուն՝ որպես սնունդ: Որպես անհետացող տեսակ գրանցվել է ԲՊՄՄ և ՀՀ Կարմիր գրքերում: ՀՀ–ում հանդիպում է Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի և Տավուշի մարզերում:

ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎ, Ատլանտ. օվկ–ի միջմայրցամաք. ծով. միացած է Ջիբրալթարի նեղուցով: Տարածքը՝ 2,5 մլն *կմ*^{2}, ջրի ծավալը՝ 3839 հզ. *կմ*^{3}, առյգն խոր.՝ 5121 *մ*: Մեծ կղզիներն են՝ Բալեարյան, Կորսիկա, Սարդինիա, Սիցիլիա, Կրետե, Կիպրոս ևն: Ծով թափվող գետերը՝ Էբրո, Ռոն, Պո, Նեղոս, Տիբեր ևն:

ՄԻՋԻՆ ԱԿԱՆՋ, տեղակայված է մարդու և ցամաք. ողնաշարավորների արտաքին և ներքին ականջի միջև. կազմված է թմբկախոռոչից՝ լսող. ոսկրիկներով և լսող. (եվստախյան) փողով: Արտաքինից սահմանազատված է թմբկաթաղանթով, որից լսող. ոսկրիկներն ընդունում են ձայն. տատանումները և դրանք հաղորդում ներքին ականջ: Բորբոքումը կոչվում է ականջաբորբ (օտիտ):

ՄԻՋԻՆ ԱՄԻԱ, պատմաաշխարհագր. մարզ Կենտր. Ասիայի արմ–ում: Ներառում է Ուզբեկստանի, Ղրղըզստանի, Տաջիկստանի և Թուրքմենստանի տարածքները: Մ. Ա–ին հաճախ վերագրվում են նաև Հվ. Ղազախստանի Արալա–Իրտիշյան ջրբաժանից հվ ընկած տարածքները: Ընդհ. բն.՝ 65,7 մլն (2012): Ազգ. կազմի մեծ մասը թյուրքալեզու է (ղազախներ, կարակալպակներ, ույղրեկներ, ղրղըզներ, թուրքմեններ), տաջիկներն իրան. խմբից են:

ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔ, *Մերձավոր Արևելքի* երկրների (տեղակայված են Եվրոպայի և Պակիստանի միջև՝ Իրանի և Աֆղանստանի հետ) պայման. անվանումը: Անգլ. և ամերիկ. գրկ–յան մեջ օգտագործվում է որպես Մերձ. Արևելքի համարժեք:

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ, **միջնադար**, պատմագիտ–յան մեջ ընդունված հասկացություն՝ ժամանակաշրջանի նշանակությամբ: Հաջորդում է Հին աշխարհի պատմությանը և նախորդում՝ Նոր պատմությանը: Հայ պատմագրության մեջ թվագրվում է IV դ.–XVII դ–ի կեսերով:

ՄԻՋԻՆ ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ (a*), մեծություն, որը հավասար է տվյալ n մեծությունների (a_1, a_2, ... a_n) արտադրյալի n աստիճանի արմատին.

$$a^* = \sqrt[n]{a_1 a_2 \dots a_n}:$$

ՄԻՋԻՆ ԹՎԱԲԱՆԱԿԱՆ, մեծություն, որն ստացվում է մի քանի (n) մեծությունների (a_1, a_2, ... a_n) գումարը գումարելիների թվի վրա բաժանելով.

$$a = (a_1 + a_2 + \dots + a_n)/n:$$

ՄԻՋԻՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ a ԵՎ b ԴՐԱԿԱՆ 2 ԹՎԵՐԻ (մաթ.), այն x թիվն է, որը հավասար է դրանց արտադրյալի քառակուսի արմատին.

$$x = \sqrt{ab}:$$

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ, հայ–ի պատմ. զարգացման՝ XII–XVI դդ. ընդգրկող ժամանակաշրջանի լեզվ. որակի անվանումը: Որպես միջբարբառ. գր. և խոսակց. լեզու՝ տարածվել է XII դ–ում, թեև նրա առանձին տարրերը ձևավորվել են ավելի վաղ: Մ. հ–ի զարգացումն ընդունված է բաժանել 2 ենթաշրջանի՝ 1. XII–XIV դդ., երբ այն գործածվել է որպես հաղորդակց. լեզու, 2. XV–XVI դդ., երբ զրկվել է նշված գործառույթից, ենթարկվել տարբեր բարբառների ազդեցությանը, կորցրել միասնական զարգացման հնարավորությունը: Մ. հ–ով պահպանվել են հարուստ և բազմաժանր գրավոր գործեր:

ՄԻՋԻՆ ՀԱՐՄՈՆԻԿԱԿԱՆ, այն γ մեծությունը, որի հակադարձը (a_1 a_2, ... a_n) մեծությունների հակադարձների միջին թվաբանականն է.

$$\gamma = \frac{n}{\frac{1}{a_1} + \frac{1}{a_2} + \dots + \frac{1}{a_n}}:$$

Տես նաև *Միջին քառակուսային*:

ՄԻՋԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (վիճակագր.), ընդհանրացնում են զանգված. գործընթացի տարրերի քանակ. բնութագրերը: Կիրառվում է երևույթի մակարդակի, ժամանակի ընթացքում նրա զարգացման, մեկ կամ մի քանի մակարդակների համեմատման, կանխատեսման և նախագծման նևի համար: Հիմնականում օգտագործվում են միջին թվաբ., միջին երկրչփ., միջին հարմոնիկ., միջին քառակուսային մեծությունները, ինչպես նաև մոդերն ու միջաթվերը:

ՄԻՋԻՆ ՄՈՂԵՍ (Lacerta media), իսկական մողեսների ընտանիքի համանուն սեռի մողես: Սարմնի երկ. 3–17 *սմ* է, պոչը կրկնակի երկար է, ինքնահատվող: Որոշ տարածքներում հանդիպում է զոլավոր և ճարպիկ մողեսների հետ: Հաճախ խնամվում է անազատ պայմաններում: Օգտակար է. ոչնչացնում է վնասատու միջատներին: ՀՀ–ում հանդիպում է գրեթե բոլոր մարզերում, Երևանի շրջակայքում:

ՄԻՋԻՆ ՈՒՂԵՂ, գլխուղեղի մաս՝ վարոլյան կամրջի և միջանկյալ ուղեղի միջև, կազմված է քառաբլուրներից և ուղեղի կոթուններից: Մ. ու–ում են տեղակայված մեծ կիսագնդերից արտատար (էֆերենտ) և աչքի ու կմախք. մկանների տոնուսը կարգավորող շարժումները, հաղորդիչ ուղիները ևն:

ՄԻՋԻՆ ՔԱՌԱԿՈՒՍԱՅԻՆ (մաթ.), մեծություն, որը հավասար է տվյալ մեծությունների (a_1, a_2 ... a_n) քառակուսիների միջին թվաբանականի քառակուսի արմատին.

$$S = \sqrt{\frac{(a_1^2 + a_2^2 + \dots + a_n^2)}{n}}:$$

ՄԻՋԻՆ ՔԱՐԻ ԴԱՐ, **մեզոլիթ**, *քարի դարի* միջին՝ անցում. ժամանակահատված՝ *Հին քարի դարի* և *Նոր քարի դարի* միջև: Սկիզբը համապատասխանում է սառցային շրջանի (պլեյստոցեն) ավարտին և սկսվող ժամանակակից երկրբ. շրջանին (հոլոցեն): Ավարտվում է խեցեգործության երևան գալով (Մ. ք. դ. կոչվել է նաև մինչխեցեգործ. Նոր քարի դար) և կամ՝ արտադրող. տնտ–յամբ խորքարիդար. (նեոլիթյան) հեղ–յուն): Մ. ք. դ–ում լայնորեն տարածվել են նետն ու աղեղը և քարե մանր գործիքները (միկրոլիթներ): Ի հայտ են եկել տոհմ. գերեզմանոցներ, մակույկներ, թիեր, քարի հղկման և մշակման տեխնիկա: Տնտ–յան հիմքը կազմել են որսորդությունը, ձկնորսությունը և հավաքչությունը: Հայկ. լ–աշխարհում Մ. ք. դ. ընդգրկել է մ. թ. ա. 12 000–10 000 թթ–ը: Արագած լ–ան, Գեղամավանի, Սյունյաց լ–ների մի շարք ժայռապատկերներ Մ. ք. դ–ի արվ–ի նմուշներ են:

ՄԻՋԻՆԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿ, որոշվում է միջինսասարական. Արեգակի ժամային անկյան փոփոխությամբ: Արեգակը դիտարկվում է որպես երևակայական կետ, որը համաչափ շարժվում

է երկն. հասարակածով՝ իրական Արեգակի խավարածրով, շարժման միջին արագությամբ:

ՄԻՋԻՆԵՎԲՈՊԱԿԱՆ ՀԱՐԹԱՎԱՅՐ, հս–ում՝ Հս. և Բալթիկ ծովերի ափերի, և հվ–ում՝ Միջին Եվրոպայի լ–ների միջև: Երկ.՝ 600 *կմ*, լայն.՝ 200–500 *կմ*, միջին բարձր.՝ 100 *մ*: Կան խիտ լեռն. ցանց, լճեր, ճահիճներ: Տարածքի մեծ մասը մշակվում է:

ՄԻՋԻՆԵՎԲՈՊԱԿԱՆ ՌԱՍԱ, ներառված է եվրոպեոիդ մեծ ռասայի կազմում: Բնորոշ են մաշկի և աչքի բաց գույնը, խարտյաշ մազերը, միջին կամ բարձր հասակը: Տարածված են Կենտր. և Արլ. Եվրոպայի երկրներում:

ՄԻՋԻՆՔ, **միջունք**, Մեծ պահքի կեսը՝ 4–րդ շաբաթվա չորեքշաբթին: Այդ օրը նշանված տղաների տներից հարսնացուներին ուղարկում են նվերներ և թխում ծիս. հաց (բաղարջ), որի մեջ մետաղադրամ են դնում. ում բաժին ընկնի այն, տարին նրա համար հաջողակ կլինի՝ ըստ հավատալիքի:

ՄԻՋԻՆՕՎԿԻԱՆՈՍԱՅԻՆ ԼԵՌՆԱՇՂԹԱՆԵՐ, Համաշխ. օվկ–ի հատակին ձևավորված լեռն. զանգվածներ: Գոտևորում է ողջ երկրագունդը: Ընդհ. երկ.՝ ավելի քան 60 հզ. *կմ*, լայն.՝ 2000 *կմ*, հարաբեր. բարձր.՝ 3–4 հզ. *մ*: Առանձին բարձր–յուններ հրաբխ. կղզիների տեսքով բարձրանում են օվկ–ի մակարդակից վեր:

ՄԻՋՄՈՅՐՅԱՄԱՔԱՅԻՆ ԲԱԼԻՍՏԻԿ ՀՐԹԻՌ, «Երկիր–երկիր» դասի մարտ. կառավարվող բալիստիկ հրթիռ՝ ավելի քան 15 հզ. *կմ* թռիչքի հեռ–յամբ: Օգտագործում են նաև տիեզերագնացության մեջ՝ որպես տանող հրթիռ: Տարբերվում են ըստ արձակման ու շարժիչ. կայանքների և այլ հարաչափերի:

ՄԻՋՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ, փոխազդեցություն էլեկտրականապես չեզոք՝ հագեցած քիմ. կապերով մոլ–ների միջև: Մ. փ–յամբ է որոշվում հեղուկների և մոլ. բյուրեղների գոյությունը և իրական ու իդեալ. գազերի տարբերությունը: Մ. փ. առաջինը հաշվի է առել Յ. Դ. *Վան դեր Վաալսը* (1873)՝ իրական գազերի ու հեղուկների հատկությունների տարբերությունները բացատրելու համար:

ՄԻՋՄՈԼՈՐԱԿԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ (աստղագիտ.), *արեգակնային համակարգի* մոլորակների միջև եղած տիեզ. նյութը, որը բաղկացած է *արեգակնային քամու* լիցքավորված մասնիկներից, փոշուց, չեզոք ջրածնի մոլ–ներից, մոլորակների մթն–ներից ցնդած գազի մասնիկներից (մոլ–ներ, իոններ):

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԹԱՏՐՈՆ, թատեր. համակարգ՝ բազմաժանր, տարակառույց, կրկեսի, դրամայի, պարերգի և ժող. խաղային բանահյուսության տարասեռ ձևերի համադրությամբ: Ձևավորվել ու զարգացել է IV–XV դդ–ում Առաջավոր Ասիայում (Բյուզանդիա, Կապադովկիա, Ասորիք, Հայաստան), Արևելքում, Արմ. Եվրոպայում: Մ. թ. Առաջավոր Ասիայում հայտնի է եղել որպես բանավոր–իմպրովիզացիոն արվ. (IV–X դդ.), որի ավանդները մասամբ ժառանգել է իտալ. կոմեդիա դելլարտեն՝: Մ. թ–ի որոշ արտահայտչաձևեր կիրառվել են նորագույն թատրոնում (Վ. Մեյերհոլդ, Ե. Վախթանգով, Բ. Բրեխտ):

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԼԱԴԵՐ, **եկեղեցական լադեր**, արևմտաեվրոպ. միջնադարի պրոֆեսիոնալ երաժշտության (հիմնականում՝ եկեղեց.) հիմքում ընկած լադերը: Օգտագործել են Վերածննդի դարաշրջանի բազմաձայն երաժշտության մեջ: Նախ՝ 8, ապա (XVI դ.)՝ 12 լադեր՝ բաժանված գլխ. (ավտենտային) և օժանդակ (պլագալ.) տեսակների: Անվանվել են հինհուն. լադերի անուններով: Կառուցվածքով տարբեր են:

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, կրթության հիմն. աստիճանի ավանդ. անվանումը երկրների մեծ մասի կրթ. համակարգում: Որպես տարր. և բարձրագույն կրթության միջանկյալ աստիճան՝ առավել պարզորոշ ձևավորվել է միջին դարերի վերջում: XV–XVI դդ–ում կոչվել է դասական կրթություն (ուս. հաստատությունը՝ *գիմնազիա*): XVIII դ–ում դասականին զուգահեռ տարածվել է ռեալական կրթությունը (ռեալ. ուսումնարաններ): Գոյություն ունի ընդհանուր և մասնագիտ. Մ. կ.: Ընդհանուր Մ. կ–յան նպատակը սովորողներին համակարգված գիտելիքներով ապահովելն է, իրականացվում է հանրակրթ. դպրոցներում (տես *Հանրակրթություն*), մասնագիտ. Մ. կ. ընդհ. Մ. կ–յան և որոշակի մասնագիտ–յան մասնագիտ. ունակությունների ու հմտությունների ամբողջությունն է, իրականացվում է նախն. և միջին մասնագիտ. ուս. հաստատություններում (տես *Նախնական* և *միջին մասնագիտական կրթություն*):

ՄԻՋՆԱՊԱՏՅԱՆ Երկրի, մանթիա, Երկրակեղևի և Երկրի միջուկի միջև ընկած պինդ թաղանթը: Կազմում է Երկրի ծավալի շուրջ 84 %–ը (առանց մթն–ի) և զանգվածի 67 %–ը: Վերին սահմանն անցնում է Մոհորովիչիչի մակերևույթով (խոր.՝ 5–70 *կմ*), ստորինը՝ միջուկի սահմանով (խոր.՝ 2980 *կմ*): Բաժանվում է վերին (մինչև 660 *կմ* խոր–յունները) և ստորին Մ–ի: Ջերմաստիճանը Մ–ում 2000–2500 °C է, ճնշումը՝ 1–136 *ՀՊա*: Մ–ի շարժընթացների հետ են կապված տեկտ. շարժումները, հրաբխականությունն ու մագմայականությունը:

ՄԻՋՆԱՐԴ ԴԱՏԱՐԱՆ, արբիտրաժային դատարան, ձեռնարկատիրության և այլ տնտ. գործունեության բնագավառում արդարադատություն իրականացնող դատ. մարմինների համակարգ: Առևտրաարդ. պալատին կից 2007–ին ՀՀ–ում ստեղծվել է Արբիտրաժային դատարան:

ՄԻՋՆՈՐՄ (անատոմ.), **մեդիաստինում** (նոր լատ.՝ mediastinum – միջնորմ), 1. մարդու և կաթնասունների կրծքի խոռոչի մաս, որտեղ տեղակայված են սիրտը, շնչափողը և կերակրափողը: Մարդու Մ. կողքերից սահմանազատված է կրծքամզային պարկերով, որտեղ տեղադրված են թոքերը, ներքևից՝ ստոծանիով, առջևից՝ կրծոսկրով, հետևից՝ ողնաշարով:

2. **Մ. շենքերի և կառույցների**, կոնստրուկտիվ տարր, որը միմյանցից բաժանում է շենքերի (կառույցների) կից սենյակները:

ՄԻՋՈՒԿ, 1. **Երկրի**, երկրագնդի կենտր., ամենախոր երկրոլորտը: Միջին շառավիղը շուրջ 3,45 հզ. *կմ* է: Կազմված է արտաքին և ներքին միջուկներից: Ջերմաստիճանը միջուկում հավանաբար 5000°C է, խտ.՝ շուրջ 12,5 *գ/սմ*^{3}, ճնշումը՝ 361 *ՀՊա*: Կազմված է երկաթի, նիկելի, սիլիցիումի և թթվածնի խառնուրդից: Արտաքին միջուկում նյութը հեղուկ վիճակում է, ներքինում՝ պինդ:

2. **Մ. ատոմի**, ատոմի դրական լիցքավորված կենտր. մասը, որտեղ կենտրոնացած է ատոմի գրեթե ողջ զանգվածը: Բաղկացած է պրոտոններից և նեյտրոններից (նուկլոններ): Պրոտոնների թիվը որոշում է Մ–ի էլ. լիցքը և ատոմի (Z) կարգաթիվը տարրերի պարբեր. համակարգում: Նեյտրոնների թիվը հավասար է զանգվածի և պրոտոնների թվերի տարբերությանը: Ծավալը համեմատական է միջուկի նուկլոնների թվին: Ծանր միջուկների տրամագծերը հասնում են 10^{-12} *սմ*–ի, թեթևներինը՝ 10^{-13} *սմ*: Միջուկի նյութի խտ. մոտ 10^{14} *գ/սմ*^{3} է:

3. **Մ. բույսի**, ցողունի կամ արմատի կենտր. մասը, որը լցված է փուխր պարենքիմային հյուսվածքով:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՂԵՏ, զանգված. ոչնչացման զենքի (միջուկ., քիմ., կենսբ.) կիրառման համընդհ. բնապահպան. հետևանքները, որոնք կործանում են Երկրի հիմն. էկոհամակարգը:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՍՏՂԱՖԻԶԻԿԱ, *աստղագիտության* բաժին. ուսումնասիրում է միջուկ. ռեակցիաներն աստղերում ու այլ տիեզ. օբյեկտներում, նաև քիմ. տարրերի առաջացման տարածվածությունը Տիեզերքում:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԶԵՆՔ, միջուկ. զինամթերքի, այն նպատակակետին հասցնելու ու կառավարելու միջոցների ամբողջությունը: Զանգված. ոչնչացման զենք է. օժտված է վիթխարի կործանիչ ուժով: Ըստ լիցքերի հզորության և գործողության հեռահասության՝ լինում է մարտավար., օպերատիվ–մարտավար. և ռազմավար.: Մ. զ–ի կիրառումը կործանարար է ողջ մարդկության համար:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԶԵՆՔԻ ՉՏԱՐԱԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ստորագրել են ԱՄՆ–ն, ԽՍՀՄ–ը, Մեծ Բրիտանիան և այլ պետություններ 1968–ին: Մասնակից երկրների թիվը՝ շուրջ 190 (2016): Միջուկ. զենքի տիրապետող մասնակից՝ները պարտավորվել են որևէ երկրի չփոխանցել միջուկ. զենք կամ այլ միջուկ. պայթուցիկ սարքավորումներ, չօգնել կամ չդրդել միջուկ. զենքի չտիրապետող որևէ պետության միջուկ. զենքի արտադր–յան կամ համապատասխան սարքավորումների ձեռքբերման: Միջուկ. զենքի չտիրապետող մասնակից՝ները պարտավորվել են չընդունել միջուկ. զենքի կամ այլ միջուկ. պայթուցիկ սարքավորումների փոխանցում, չարտադրել և որևէ այլ միջոցով ձեռք չբերել միջուկ. զենք կամ այլ միջուկ. պայթուցիկ սարքավորումներ, չձգտել որևէ օգնության և չկիրառել որևէ օգնություն միջուկ. զենքի կամ այլ միջուկ. պայթուցիկ սարքավորումների արտադրյան համար: Մասնակից երկիրն իրավունք ունի Ատոմային Էներգիայի միջազգ. գործակալության վերահսկողությամբ խաղաղ նպատակներով զարգացնելու միջուկ. տեխնոլոգիաները: Պայմանագրին միանալու որոշումը ՀՀ ԳԽ–ն ընդունել է 1991–ի սեպտ. 24–ին:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՋԵՆՔԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԳԵԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, կնքվել է Մոսկվայում (*Մոսկվայի պայմանագիր*) 1963–ի օգոստ. 5–ին՝ ԽՍՀՄ–ի, ԱՄՆ–ի և Մեծ Բրիտանիայի միջև: Արգելում է միջուկ. զենքի փորձարկումը մթն–ում, տիեզ. տարածության մեջ, ջրի տակ (տարածք. ջրերում կամ բաց ծովում): Պայմանագրի սահմանափակ ռե-

ժիմն ընդարձակվել է 1996-ին կնքված Միջուկ. փորձարկումների համընդհ. արգելման պայմանագրով, որը, սակայն, որոշ միջուկ. երկրներ չեն վավերացրել և ստորագրման համար բաց է ցայսօր: Ստորագրել է 171 պետություն, վավերացրել՝ 138-ը (2009):

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ, միջուկ. ֆիզիկայի փորձարար. մեթոդների համախումբ, որոնցում մասնիկներից եկող տեղեկույթի ստուգման, փոխակերպման և մշակման համար օգտագործում են էլեկտրոն. սարքեր: Միջուկ. շարժընթացների փոքր տևողությունը, կրկնման մեծ հաճախությունը և ճառագայթման ֆոնի առկայությունը Մ. է-ից պահանջում են բարձրարագ լուծունակություն (10^{-9} *վ* կարգի):

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱ, ատոմային էներգետիկա, էներգետիկայի բնագավառ, որտեղ էլեկտրիֆիկացիայի և ջերմաֆիկացիայի համար օգտագործում են միջուկ. էներգիան, ինչպես նաև գիտ-յան ու տեխնիկայի բնագավառ, որտեղ մշակում են միջուկ. էներգիան էլեկտրականի և ջերմայինի փոխակերպելու մեթոդներ ու միջոցներ: Մ. է-ի հիմքն ԱԷԿ-ներն են: Առաջին ԱԷԿ-ը (5 *ՄՎտ*), որով միջուկ. էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման սկիզբն է դրվել, գործարկվել է ԽՍՀՄ-ում (Օբնինսկ, 1954): Աշխարհում էլեկտրաէներգիայի արտադր-յան ընդհ. ծավալում Մ. է-ի բաժինը գնալով աճում է: ԱԷԿ-ի անվտանգության բարձրացման խնդիրը ռազմավար. կարևորություն ունի:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱ, ատոմային էներգիա, միջուկ. փոխարկումների ժամանակ անջատվող ատոմ. միջուկների ներքին էներգիան: Առաջանում է ծանր միջուկների տրոհման շղթ. և թեթև միջուկների ջերմամիջուկ. սինթեզի ռեակցիաների արդյունքում:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԼԻՑՔ, սարք, որում կատարվում է միջուկ. էներգիայի անջատման պայթյուն. շարժընթացը: Մ. լ-երը ներառված են միջուկ. ռազմամթերքի կազմում և լինում են 2 տեսակի՝ **միջուկային**, որոնց պայթյունի էներգիան պայմանավորված է միջուկ. շղթ. ռեակցիաներով, և **ջերմամիջուկային**, որոնց էներգիան պայմանավորված է սինթեզի ջերմամիջուկ. և տրոհման ռեակցիաներով: Միջուկ. զենքում Մ. լ. տեղակայվում է ավիացիոն ռումբի հրթիռի մարտ. գլխիկի, ինքնաշարժ ջրականի (տորպեդ) ևնի մեջ: Մ. լ-ի պայթյունի կործանարար գործոններից են հարված. ալիքը, լուս. և թափանցող ճառագայթումները, ճառագայթաակտիվ վարակումը և էլեկտրամագնիս. իմպուլսը:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ԻՆՍՏԻՏՈՒՏ, միջազգ. միջկառավար. ԳՀ կազմ-յուն. ուսումնասիրում է միջուկ., տես., նեյտրոն. ֆիզիկայի և այլ հիմնախնդիրներ: Հիմնադրվել է 1956-ին Դուբնա ք-ում (Մոսկվայի մարզ)՝ ԽՍՀՄ ԳԱ միջուկ. հիմնախնդիրների ինստ-ի և Էլեկտրաֆիզ. լաբորատորիայի հիմքի վրա՝ որպես Արլ. Եվրոպայի երկրների միջազգ. ԳՀ կենտրոն (18 հիմնադիր պետությունների մասնակցությամբ): Հետազոտման հիմն. ուղղությունները՝ միջուկ. ֆիզիկա, տարր. մասնիկների ֆիզիկա և նյութի կոնդենսված վիճակի ֆիզիկա: Այս ինստ-ում են աշխատել Գ. Ն. *Ֆլյորովը*, Յուրի *Հովհաննիսյանը* (որոնց անուններով կոչվել են քիմ. տարրեր) և ուր.: Նորելյան մրց.:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՀՐԹԻՌԱՅԻՆ ՇԱՐԺԻՉ, հրթիռ. շարժիչ, որի բանող մարմինը միջուկ. ռեակցիայի կամ ռադիոակտիվ տրոհման ժամանակ անջատված էներգիայի հաշվին տաքացած որևէ նյութ է (օր.՝ ջրածին) կամ այդ ռեակցիայի անմիջական արգասիքը:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՌԵԶՈՆԱՆՍ (ՄՄՌ), *էլեկտրամագնիսական ալիքների* ռեզոնանս. կլանում, որը պայմանավորված է տարբեր կողմնորոշումներով ատոմի միջուկի էներգ. վիճակների միջև միջուկ. սպինի քվանտ. անցումներով: Միջուկների մեծամասնության համար $\approx 10^5$–10^6 *Ա/մ* լարվածության մագնիս. դաշտում ՄՄՌ դիտվում է 1–10 *ՄՀց* հաճախության տիրույթում: ՄՄՌ սպեկտրներն օգտագործվում են պինդ մարմինների և բարդ մոլ-ների հետազոտությունների համար:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑ, ատոմային մարտկոց, էլ. հոսանքի աղբյուր, որի մեջ ռադիոակտիվ տարրերի (օր.՝ ^{90}Sr, ^{167}Cs) քայքայումից անջատվող էներգիան անմիջականորեն փոխարկվում է էլեկտրականի: Պարզագույն Մ. մ. կազմված է ճառագայթման աղբյուրից (էմիտեր) և լիցքավորված մասնիկների հավաքիչից (կոլեկտոր), որոնց միջև եղած տարածքը լցված է պինդ կամ գազանման դիէլեկտրիկով կամ վակուումացված է: Հզորությունը՝ մի քանի *Վտ*-ից մինչև մի քանի հարյուր *Վտ*: Մ. մ-ներն օգտագործում են որպես էլեկտրաէներգիայի փոքրաչափ ինքնուրույն աղբյուրներ՝ տիեզ., չափիչ, բժշկ. էլեկտրոն. և այլ սարքերում:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՄՈՄԵՆՏՆԵՐ (ֆիզ.), ատոմ. միջուկների ներքին առանձնահատկությունները բնութագրող մեծություններ: Տարբերում են շարժման քանակի մոմենտներ և էլեկտրամագնիս. մոմենտներ: Շարժման քանակի մոմենտը կամ միջուկի *սպինը* կարող է ընդունել ամբողջ և կիսամբողջ թվային արժեքներ:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՇՂԹԱՅԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ (ֆիզ.), նեյտրոնների ազդեցությամբ ատոմ. միջուկների տրոհման այնպիսի ինքնապահպանվող ռեակցիաներ, երբ տրոհման յուրաքանչյուր գործողություն ուղեկցվում է առնվազն 1 նեյտրոնի արձակմամբ, որը պահպանում է ռեակցիան: Մ. շ. ռ. միջուկ. էներգիայի անջատման եղանակ են:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՊԱՅԹՅՈՒՆ, մասշտաբներով և կործանիչ ուժով վիթխարի պայթյուն, որն առաջանում է ծանր միջուկների (^{235}U կամ ^{239}P) տրոհման շղթ. ռեակցիայի կամ ավելի թեթև միջուկներից՝ հելիումի միջուկների սինթեզի հետևանքով էներգիայի անջատումից:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՊԱՐԱՄԱԳՆԻՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ատոմ. միջուկների մագնիս. մոմենտներով պայմանավորված նյութերի *պարամագնիսականություն*: Միջուկ. մագնիսացածությունը 10^6–10^8 անգամ ավելի փոքր է, քան էլեկտրոն. պարամագնիսականության դեպքում: 1937-ին հայտնաբերել են Լ. Վ. *Շուբնիկովը* (1901–1945) և Բ. Գ. Լազարևը (1906–2001) բյուրեղ. ջրածնում:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՌԱԶՄԱՄԹԵՐՔ (անցյալում՝ **ատոմային ռազմամթերք**), միջուկ. լիցքով ռազմամթերք, օր.՝ հրթիռնեռի և ինքնաշարժ ջրականների (տորպեդ) մարտագլխիկները, ավիացիոն ռումբերը, հրետան. արկերը, խորք. ռումբերը, ճարտարագիտ. և ծով. ականները: Ըստ հզորության (բնութագրվում է տրոտիլային համարժեքով)՝ ստորաբաժանվում է գերփոքր (միջուկ. լիցքը՝ մինչև 1 *կգ*), փոքր (1–10 *կգ*), միջին (10–100 *կգ*), մեծ (100 *կգ*–1 *Մտ*) և գերմեծ (1 *Մտ*-ից ավելի) ընդգրկույթների:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՌԵԱԿՏՈՐ, ատոմային ռեակտոր, սարք, որում իրականացվում և ընթանում է ատոմ. միջուկների տրոհման կառավարվող շղթ. ռեակցիա: Առաջին Մ. ռ. գործարկվել է 1942-ին ԱՄՆ-ում (ԽՍՀՄ-ում՝ 1948-ին): Միջուկները տրոհվում են ռեակտորի ակտիվ գոտում, որն ուղեկցվում է զգալի քանակության էներգիայի անջատումով: Մ. ռ-ները դասակարգվում են՝ ըստ միջուկների տրոհումն առաջացնող նեյտրոնների էներգիայի (ջերմ., արագ և միջանկյալ նեյտրոններով Մ. ռ.), ըստ միջուկ. վառելանյութի բաշխման բնույթի (հոմոգեն և հետերոգեն), ըստ օգտագործված դանդաղեցուցչի (գրաֆիտ., ջր. ևն), ըստ նշանակման (էներգետիկ., հետազոտ.) ևն: Կիրառվում են ԱԷԿ-ներում և ատոմ. նավերի ուժային կայանքներում էլեկտրաէներգիա արտադրելու համար, գիտ. հետազոտություններում, միջուկ. վառելանյութ վերարտադրելու և այլ նպատակներով:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ, ատոմ. միջուկների փոխակերպումներ, երբ դրանք փոխազդում են տարր. մասնիկների, γ-քվանտների կամ միմյանց հետ: Մ. ռ., որոնցում թռչող մասնիկն էներգիան հաղորդում է ոչ թե ողջ միջուկ-թիրախին, այլ առանձին նուկլոնին կամ այդ միջուկի նուկլոնների խմբին, կոչվում է ուղիղ Մ. ռ.: Մ. ռ. առաջինն ուսումնասիրել է Է. *Ռեզերֆորդը* 1919-ին: Տես նաև *Գամմա-քվանտ, Լուսամիջուկային ռեակցիաներ, Միջուկային շղթայական ռեակցիաներ*:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՌՈՒՄԲ, միջուկ. լիցքով. վիթխարի կործանիչ ուժով ավիացիոն ռումբ: Նետում են ինքնաթիռներից կամ թռչող այլ սարքերից՝ տարբեր նպատակակետեր խոցելու համար:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՍՊԵԿՏՐԱԴԻՏՈՒՄ, միջուկ. ֆիզիկայի բնագավառ, որտեղ ուսումնասիրում են միջուկների հատկությունները տարբեր վիճակներում (էներգիաներ, սպիններ ևն)՝ չափելով ճառագայթաակտիվ տրոհման ժամանակ կամ միջուկ. ռեակտորներում առաջացած մասնիկների էներգ. սպեկտրի ինտենսիվությունը, անկյուն. բաշխումը և բևեռացումը:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹ, կիրառվում է *միջուկային ռեակտորում* էներգիա ստանալու համար: Մ. վ. սովորաբար տրոհվող նուկլիդներ (օր.՝ ^{235}U, ^{239}Pu) պարունակող նյութերի խառնուրդ է: Զոների տեսքով տեղադրում են ռեակտորի ակտիվ գոտում:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՎԹԱՐ, առաջանում է *միջուկային ռեակտորում* շղթ. ռեակցիայի անկառավարելի ընթացքով՝ ջերմ. ցատկի հետևանքով, որն առաջանում է ռեակտորի կամ նրա ակտիվ գոտու վնասվածքներից: Մ. վ. կանխում են ռեակտորի վթարային պաշտպ-յան միջոցով: Մ. վ-ի խոշոր դեպք էր Չեռնոբիլի ԱԷԿ-ի կայանի պայթյունը (1986):

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱ, միջուկ. էներգիայի օգտագործման հետ կապված

տեխնիկայի բնագավառ, տեխ. միջոցների համախումբ, որոնք նախատեսված են միջուկ. փոխակերպումների ժամանակ անջատվող էներգիայի նպատակահարմար օգտագործման համար: Հիմն. ուղղություններն են ռեակտորաշինությունը, միջուկ. վառելանյութի և ճառագայթաակտիվ իզոտոպների, նաև միջուկ. զենքի արտադր-յունը, ճառագայթահարումից անձնակազմի պաշտպ-յան մեթոդների և միջոցների մշակումը:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՈՒԺԵՐ, միջուկում նուկլոնները (պրոտոններ և նեյտրոններ) պահող ուժեր: Մ. ու. գործում են միայն 10^{-13} *սմ*-ից ոչ ավելի հեռ-յան վրա, հասնում են մի մեծության, որը 100–1000 անգամ գերազանցում է էլ. լիցքերի փոխազդեցության ուժը: Մ. ու. կախված չեն նուկլոնների լիցքից և պայմանավորված են *ուժեղ փոխազդեցություններով*:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՔԻՄԻԱ, գիտ-յան բաժին՝ միջուկ. ֆիզիկայի, ճառագայթաքիմիայի ու քիմ. ֆիզիկայի սահմանագծին: Ուսումնասիրում է ատոմ. միջուկների փոխարկումների և ատոմների ու մոլ-ների էլեկտրոն. թաղանթների կառուցվածքի փոխադարձ կապը: Հաճախ «Մ. ք.» տերմինը կիրառում են այն նույն իմաստով, ինչ «ճառագայթաքիմիան»:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՔՎԱԴՐՈՒՊՈԼԱՅԻՆ ՌԵԶՈՆԱՆՍ (ՄՔՌ), ռադիոճառագայթների ռեզոնանս. կլանում, որը պայմանավորված է միջուկի էլեկտրաքվադրուպոլ. մոմենտի տարբեր կողմնորոշումներով վիճակների միջև միջուկների քվանտ. անցումներով: ՄՔՌ օգտագործում են միջուկների քվադրուպոլ. մոմենտները, բյուրեղների համաչափությունն ու կառուցվածքը որոշելու համար:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՖԻԶԻԿԱ, ֆիզիկայի բաժին. ուսումնասիրում է ատոմ. միջուկների կառուցվածքը, հատկությունները և փոխակերպումները: Առաջացել է XX դ-ի սկզբին: Հետազոտում է ճառագայթաակտիվ տրոհման շարժընթացները և *շղթայական ռեակցիաները*: Տես. Մ. ֆ. ուսումնասիրում է տարբեր միջուկ. մոդելներ, որոնք հնարավորություն են տալիս բացատրելու հիմն. և գրգռված միջուկ. վիճակների հատկությունները, միջուկ. ռեակցիաների մեխանիզմները, այդ թվում՝ նաև հադրոնների քվարկային հաշվառմամբ:

ՄԻՋՈՒԿԻ ՃԵՂՔՈՒՄ, ատոմի միջուկի տրոհումը 2 (հազվադեպ՝ 3 կամ 4) ավելի թեթև, զանգվածով իրար մոտ մասերի (բեկոր միջուկներ): Նեյտրոնների ազդեցությամբ Մ. ճ. հայտնաբերել են Օ. *Հանը* և Ֆ. *Շտրասմանը* (1938): Ուղեկցվում է 2-րդ. նեյտրոնների, γ – քվանտների առաջացումով և էներգիայի անջատումով: Դրանով է պայմանավորված *միջուկային շղթայական ռեակցիաների* գործն. կիրառությունը, *միջուկային ռեակտորների* ստեղծումը, միջուկ. պայթյունների իրականացումը: Միջուկի ինքնաբեր (ինքնակամ) ճեղքումը (հայտնաբերել են Գ. Ն. *Ֆլյորովը* և Կ. *Պետրժակը* 1940-ին) տեղի ունի միայն ծանր տարրերում (օր.՝ ուրանում) և սահմանափակում է ավելի ծանր անդրուրան. տարրերի կայունությունը:

ՄԻՋՈՒԿԻ ՄՈԴԵԼՆԵՐ, ատոմ. միջուկների կառուցվածքների և հատկությունների նկարագրության մոտավոր մոդելներ, որոնք հիմնված են պարզ մաթ. նկարագրություններ ենթադրող պատկերացումների վրա: Օր.՝ միջուկի կաթիլ., հոլակի և այլ մոդելներ: 1930-ական թթ-ին առաջարկվել է ատոմ. թաղանթների մոդելի նմանությամբ՝ **թաղանթային մոդելը**, որը միջուկը դիտարկում է որպես նուկլոնների համակարգ, որոնք շարժվում են մյուս նուկլոնների ստեղծած որոշակի միջին պոտենցիալ. դաշտում:

ՄԻՋՈՒԿՆԵՐ ԳԱԼԱԿՏԻԿԱՆԵՐԻ, *գալակտիկաների* կենտր. մասերում դիտվող նյութի լուսավոր, ամփոփ խտույթներ: Մ. գ-ի զանգվածը գալակտիկայի ընդհ. զանգվածի ընդամենը մի քանի տոկոսն է: Երբեմն Մ. գ-ի ներսում ավելի փոքր միջուկն է («կեռն»): Ներկա պատկերացումներով գալակտիկաների միջուկներում տեղի են ունենում ակտիվ շարժընթացներ, որոնք հանգեցնում են նրանցից գազի զգալի զանգվածի արտաժայթքման:

ՄԻՋՈՒԿՆԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԲԵՎԵՌԱՑՈՒՄ, հաստատուն մագնիս. դաշտում ռադիկալ. քիմ. ռեակցիաների վերջնանյութերի մոլ-ներում միջուկ. զեեմանյան մակարդակների անհավասարակշիռ բնակեցվածության երևույթը: Դիտվում է ՄՄՌ եղանակով, սպեկտրներում արտահայտվում է որպես անոմալ մեծ կլանում (դրական Մ. ք. բ.) և ռադիոճառագայթում (բացաս. Մ. ք. բ.): Կիրառվում է քիմ. ռեակցիաների փուլերը որոշելու համար:

ՄԻՋՕՐԵԱԿԱՆ, 1. **աշխարհագրական**, Երկրի մակերևույթի և պտտման առանցքով ու մակերևույթի որևէ կետով տարած հարթության հատման գիծ: Սկզբնական է համարվում այն Մ., որից կատարվում է աշխարհագր. երկայն-յան հաշվարկը: Ընդհ այդպիսին՝ ընդունված է *Գրինվիչի միջօրեականը*: 2. **Երկնային**, երկնոլորտի մեծ շրջան, որն անցնում է աշխարհի բևեռներով, զենիթով և նադիրով:

ՄԻՋՕՐԵԱԿԱՆ ՇՐՋԱՆ, աստղագիտ. գործիք՝ երկն. լուսատուների հասարակած. կոորդինատների որոշման համար՝ նրանց երկն. հասարակածով անցման դիտումներով: Ստեղծել է դանիացի աստղագետ Օ. Ռյոմերը (1644–1710): Ժամանակակից Մ. շ-ում աստղադիտակը պտտվում է միջօրեականի հարթությունում՝ հորիզոն. առանցքի շուրջը, որի վրա հագցված են սանդղակներ ունեցող շրջաններ՝ անկյունները չափելու համար:

ՄԻՌԼԻՍ (Mirrlees) Ջեյմս (ծ. 1936), բրիտանացի տնտեսագետ: Աշխ-ները վերաբերում են օպտիմալ ածի, հարկման, նախագծերի գնահատման, ոչ ռացիոնալ վարքի, սոցիալ. ապահովագրության խնդիրներին:

Նոբելյան մրց. (1996, Ու. *Վիքրիի* հետ):

«ՄԻՈՒՆԻ», 530 *տ* ջրատարողությամբ ռազմ. երկառագաստ միակայմ նավ (շնյուպ): Կառուցվել է 1818-ին: Մ. Պ. Լազարևի հրամանատարությամբ ռուս. 1-ին անտարկտիդ. շուրջերկրյա արշավախմբի (1819–21) կազմում Ֆ. Ֆ. *Բելինսգաուզենի* ղեկավարությամբ մասնակցել է գիտարշավին, որի ընթացքում հայտնաբերվել է *Անտարկտիդան*:

ՄԻՄ ՎԱՆ ԴԵՐ ՌՈՒԵ (Mies van der Rohe) Լյուդվիգ (1886–1969), գերմանացի ճարտ.: 1938-ից՝ ԱՄՆ-ում: Զարգացրել է կատարյալ «ունիվերսալ ձևի» գաղափարը, ստեղծել պողպատե կմախքով զուգահեռանիստ շենքի տիպը՝ կախովի պատերի համատարած ապակեպատումով (Սիգրեմ Բիլդինգը Նյու Յորքում, 1958):

ՄԻՍԱՔՅԱՆ Արփիկ Շավարշի (1926–2015), խմբ., հրտ.: Շավարշ *Միսաքյանի* դուստրը: 1940-ական թթ-ից՝ *«Յառաջ»* (1925–2009) օրաթերթի աշխատակից, 1957–2009-ին՝ գլխ. խմբ.: Մ-ի նախաձեռնությամբ 1957-ից գործել է թերթի տպարանը, որտեղ տպագրվել են նաև «Յառաջ» մատենաշարի շուրջ 30 հատորները:

ՄԻՍԱՔՅԱՆ Շավարշ (1884–1957), հասքաղ. գործիչ, հրապարակագիր, խմբ.: Արփիկ *Միսաքյանի* հայրը: Կ. Պոլսում 1908-ին հիմնադրել է «Արծիվ» գրատունը, 1908–09 և 1912–13-ին հրատարակել «Ազդակ», 1914-ին՝ «Ալիք», 1914–15 և 1918-ին՝ *«Ազատամարտ»*, 1911–12-ին Կարինում՝ *«Յառաջ»* թերթերը: 1925–57-ին՝ Փարիզի *«Յառաջ»* թերթի հիմնադիր-խմբ.: Հեղինակ է «Օրեր և ժամեր» (հրտ.՝ 1958) ժող-ի: Կատարել է թարգմ-յուններ:

ՄԻՍԱՔՅԱՆ–ՔԵՍԻՄՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ, հիմնադրվել է 1847-ին Բուխարեստում՝ բարերար Վարդերես Միսաքյանի նվիրատվությամբ: Սկզբում՝ որպես նախակրթարան (4 դասարան), մի քանի անգամ փակվել և վերաբացվել է: 1920-ական թթ-ին բացվել են 5–8-րդ դասարաններ: 1926-ին Սարիամ Քեսիմի միջոցներով կառուցվել է նոր շենք, դպրոցը վերանվանվել Մ–Ք. ա. վ.: 1939-ին բացվել է գիշերօթիկ բաժին: Փակվել է 1965-ին:

ՄԻՍԻՄՈ Յուկիո (Հիրառկա Կիմիտակե, 1925–1970), ճապոնացի գրող, դերասան, կինոյի և թատրոնի ռեժ.: Նրբաճաշակ վեպերում հաստատել է սամուրայական պատվի վարքականոնը («Հայրենասերը», «Քրիզանթեմ», «Հերոսի հոգու ճիչը», 1967, եռերգություն): «Դիմակի խոստովանությունը» (1949), «Սիրո ծարավ» (1950), «Ոսկե տաճար» (1956) վեպերում արտահայտել է ֆիզիկապես և հոգեպես թերարժեք, մահվան, դաժանության ու ոչնչացման ձգտող հերոսների երկմտությունը: Հեղինակ է «Իմ ընկեր Հիտլերը» (1968) և այլ պիեսների, նաև վիպակների, նովելների, էսսեների: Ինքնասպան է եղել (խարակիրի)՝ որպես ԵՀՊ-ում Ճապոնիայի կրած պարտության դեմ բողոքի նշան:

ՄԻՍԻՈՆԵՐՈՒԹՅՈՒՆ (լատ.՝ missio – առաքում, հանձնարարություն), կրոն. կազմ-յունների և եկեղեցիների գործունեության տարատեսակ, որի նպատակն «Աստծու խոսքը» տարածելն է, այլադավաններին «Ճշմարիտ» հավատով «լուսավորելը», տվյալ կրոն. կազմ-յան (եկեղեցի) ազդեցության ոլորտը և ընդլայնելը: Քրիստ. Մ. առաջացել է V դ-ում: Կաթոլիկ Մ. (գլխավորում է Վատիկանը) գործունեության ավանդ. եղանակների հետ օգտագործում է նաև քարոզչ. ժամանակակից հնարավորությունները:

ՄԻՍԻՐ, հայ ազնվական. գերդաստան Լեհաստանում և Ռումինիայում: Գաղթել են Անիից: Լեհաստանում հիշատակվում են XV, Ռումինիայում՝ XVII դ-ից: Ունեցել են իշխան. տիտղոս, կալվածքներ: Նշանավոր ներկայացուցիչներից են **Բազիլ** (Բասիլ), **Պետրե Թ.** (1856–1929), **Յոան Բոգդանի** (1890–1944), **Նիկոլայե** (1896–1965) Մ-ները:

ՄԻՍԼԲԵԿ (Myslbek) Յոսեֆ Վացլավ (1848–1922), չեխ քանդ.: XX դ-ի սկզբի չեխ. ազգ. քանդ-յան դպրոցի հիմնադիրներից: Հեղինակ է չեխ պատմ. գործիչների, ազգ. էպոսի հերոսների մոնումենտալ հուշարձանների (Սբ Վացլավի հուշար-

ձանը համանուն հրապարակում, 1900–13, Պրահա), դեկորատիվ քանդակների:

ՄԻՍԿԻՆ-ԲՈՒՐՋԻ (1810–1847), աշուղ: Հորինել է հայ. և թուրք. երգեր, խաղացրել նաև տիկնիկներ: 1832-ից կազմել է «Դաւթար»: Պահպանվել են մի քանիսի մեղեդիները, որոշ երգեր հրատարակվել են Ա. Քոչարյանի «Հայկական գուսանական երգեր» (1976) ժող-ում:

ՄԻՍԿԻՆՅԱՆ (Միսկին) Երվանդ (Էդվարդ) Գևորգի (1893–1943), հեղ.: 1921-ին ղեկավար մասնակցություն է ունեցել *Լոռու «Չեզոք գոտի»*-ում կազմակերպված ապստամբությանը:

ՄԻՍՍԻՍԻՊԻ (Mississippi), 1. գետ ԱՄՆ-ում, աշխարհում՝ խոշորագույններից: Երկ.՝ 3950 *կմ* (Միսսուրիի ակունքից՝ 6420 *կմ*), ջրի միջին ծախսը՝ 19 հզ. *մ³/վ*: Թափվում է Մեքսիկ. ծոց: Գլխ. վտակները՝ Միսսուրի, Արկանզաս, Ռեդ Ռիվեր, Իլինոյս, Օհայո: Հաճախակի են ուժեղ ջրհեղեղները, որոնք կանխելու նպատակով կառուցվել են պատվարներ, ամբարտակներ և ջրամբարներ: Կարևոր տրանսպորտ. մայրուղի է, երկ.՝ 3 հզ. *կմ* (Մինեապոլիս ք-ից): Ջրանցքներով միացած է Մեծ լճերին: Մ-ի ափերին են Մինեապոլիս, Դավենպորտ, Սենտ Լուիս, Մեմֆիս, Բատոն Ռուժ, Նոր Օռլեան ք-ներն ու գետ. նվինգստ-ները: 2. Նահց ԱՄՆ-ի հվ-ում: Տարածքը՝ 123,5 հզ. *կմ²*, բն.՝ 3 մլն (2012): Վարչ. կենտրոնը՝ *Ջեքսոն*:

ՄԻՍՍԻՍԻՊՅԱՆ ԳԱՄԲՈՒԶԻԱ (Gambusia holbrooki), պեցիլային ձկների ընտանիքի փոքր ձուկ: Սարմնի երկ.՝ 2–4 (երբեմն՝ մինչև 6) *սմ*: Արդ. նշանակություն չունի: Հայաստանի ջրավազաններ ներմուծվել է 1934-ին՝ մալարիայի մոծակի դեմ պայքարելու նպատակով:

ՄԻՍՍՈՒՐԻ (Missouri), 1. գետ ԱՄՆ-ում, *Միսիսիպիի* աջ վտակը: Երկ.՝ 4088 *կմ*, ավազանը՝ 1370 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 2,4 հզ. *մ³/վ*: Գլխ. վտակները՝ Ելոուսթոն, Պլատ, Կանզաս: Կառուցել են խոշոր ջրամբարների համակարգ: Մ-ի ափին են Օմահա, Կանզաս Սիթի ք-ները: 2. Նահց՝ ԱՄՆ-ի հս-ում: Տարածքը՝ 180,5 հզ. *կմ²*, բն.՝ 6 մլն (2012): Վարչ. կենտրոնը՝ *Ջեֆերսն Սիթի*:

ՄԻՍՍՈՒՐԻԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ԱՄՆ-ի խոշորագույն բուհերից, հիմնադրվել է 1839-ին Կոլումբիա ք-ում: Ունի մասնաճյուղեր Կանզաս Սիթի, Ռոլլա, Սենտ Լուիս ք-ներում: 2015-ին ուներ ավելի քան 30 հզ. ուսանող:

ՄԻՍՏԵՐԻԱ, միջնադար. թատրոնի ժանր Արմ. Եվրոպայում: Մ-ի ներկայացումները կրոն. տեսարաններն ընդմիջվել են ներդրված կատակերգ-կենցաղ. դրվագներով՝ ինտերմեդիաներով:

ՄԻՍՏԵՐԻԱՆԵՐ (հուն.՝ mysterion – գաղտնիք), կրոն. խորհրդավոր ծիսակատարություններ Հին աշխարհում: Հայտնի են՝ Հին Եգիպտոսում՝ Օսիրիսի և Իսիդայի, Բաբելոնում՝ Թամուզի, Հին Հունաստանում՝ Էլևսինի, Հին Հռոմում՝ Բաքոսի Մ., ևն:

ՄԻՍՏԻԿԱ (հուն.՝ mystika – խորհրդավոր), կրոն. պրակտիկա, որի նպատակն էքստազի միջոցով Աստծու հետ «անմիջականորեն միավորվելն» է: Մ. աստվածաբան. և փիլ. գիտակարգերի ամբողջություն է, որն արդարացնում և իմաստավորում է այդ փորձը: Նշանակում է նաև խորհրդավոր՝ անբացատրելի՝ անիմանալի բան:

ՄԻՍՏԻՑԻԶՄ, ուսմունք, որի համաձայն՝ իրական ռեալությունն անհասանելի է բանականությանը և ըմբռնելի է միայն ինտուիտիվ-էքստատիկ միջոցներով: Որպես փիլ. ուսմունք՝ ինտուիտիվիզմի և իռացիոնալիզմի տարատեսակ է:

ՄԻՍՏՐԱԼ (Mistral) Գաբրիելա (Լուսիլա Գոդոյ Ալկայագա, 1889–1957), չիլիացի բանաստեղծուհի: Հեղինակ է «Մահվան սոնետներ» (1914), «Հուսահատություն» (1922), «Տալա» (1938), «Հաձան» (1954) և այլ բանաստեղծությունների ժող-ների:

Նոբելյան մրց. (1945):

ՄԻՍՏՐԱԼ Ֆրեդերիկ (1830–1914), պրովանսացի բանաստեղծ: Ֆելիբրների շարժման առաջնորդը: Հեղինակ է «Պրովանսացիներ» (1852) անթոլոգիայի, «Միրեյո» (1859) պոեմի, «Ոսկե կոզիներ» (1876), «Զիթապտղի բերքահավաք» (1912) ժող-ների, նաև «Ֆելիբրիժի գանձը» (1879–87) պրովանս-ֆրանս. բառարանի: Նոբելյան մրց. (1904):

ՄԻՏԱԳ-ԼԵՖԼԵՐ (Mittag-Leffler) Մագնուս Գուստավ (Գեստա, 1846–1927), շվեդ մաթեմատիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. (1896), ԽՍՀՄ ԳԱ արտ. պատվ. (1926) անդամ: «Acta mathematica» ամսագրի հիմնադիրը: Աշխ-ները վերաբերում են ֆունկցիաների տեսությանը:

ՄԻՏԱՆՆԻ, Խուրի, Խանիգալբատ, Նախրայնա, հնագույն պետություն Հս. Միջագետքում մ. թ. ա. XVII–XIII դդ-ում: Մայրաքաղաքը՝ Վաշշուգանե: Հզորացել է XVI–XV դդ-ում, անկում ապրել Ասորեստանի Սալմանասար I թագավորի հարվածներից (1270-ական թթ.): Մ. եգիպտ. աղբյուրներում հիշատակվում է «Նահարինա» անվամբ, որը, հավանաբար, նույնանում է *«Նախրի»* տեղանվան հետ: Մ-ի թագավորները հայոց ազգ. պատմագր. ավանդույթում համարվում են հայ արքաներ:

ՄԻՏԵՆԿՈՎ Ֆեոդոր Միխայլովիչ (1924–2013), ատոմ. էներգամեքենաշինության բնագավառի ռուս. գիտնական: ՌԴԱ ակադ. (1990): Սոց. աշխ. հերոս (1978): Աշխ-ները վերաբերում են ատոմ. ռեակտորների ֆիզ. և ջերմաֆիզ. հատկություններին:

ԽՍՀՄ (1969), ՌԴ (1988) Պետ., Լենինյան (1982) մրց-ներ:

ՄԻՏԻՆ Մարկ Բորիսովիչ (1901–1987), ռուս. փիլ.: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939): Աշխ-ները վերաբերում են դիալեկտիկ. և պատմ. մատերիալիզմին, բուրժ. փիլ-յան քննադատությանը: 1930–44-ին՝ «Մարքսիզմի դրոշի ներքո», 1960–68-ին՝ «Փիլիսոփայության հարցեր» (երկուսն էլ՝ ռուս.) ամսագրերի գլխ. խմբ.: 1939–44-ին՝ ՀամԿ(բ)Կ ԿԿ-ին առընթեր Մարքս-Էնգելս-Լենինի ինստ-ի տնօրեն:

ԽՍՀՄ Պետ. (1943), Գ. Վ. Պլեխանովի անվ. (1983) մրց-ներ:

ՄԻՏԿԵՎԻՉ Վլադիմիր Ֆեոդորովիչ (1872–1951), ռուս էլեկտրատեխնիկ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1929): ԳՈԷԼՌՈ պլանի կազմման մասնակից: Աշխ-ները վերաբերում են էլեկտրատեխնիկայի տեսությանը և ֆիզ. հիմունքներին, էլեկտրաէներգիայի հաղորդմանը: Լենինյան (1928), ԽՍՀՄ Պետ. (1943) մրց-ներ:

ՄԻՏՈԳԵՆԵՏԻԿ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐ, փոքր ինտենսիվության՝ 1900–3250 A^0 ալիքի երկ-յան ԱՄՃ-ներ: Առաջանում են բույսերի և կենդանիների բջիջներում ու հյուսվածքներում՝ ֆերմենտ. ռեակցիաների ժամանակ: Հայտնաբերել է Ա. Գ. *Գուրվիչը* (1923) և ցույց տվել դրանց խթանող դերը բջիջների բաժանման՝ միտոզի ժամանակ (այստեղից՝ անվանումը): Մ. ճ-ի սպեկտրի վերլուծությունից պարզվել է, որ նրանց ինտենսիվությունը կախված է հետազոտվող օբյեկտի ֆիզիոլոգ. վիճակից: Հակասական փորձև. արդյունքների պատճառով Մ. ճ-ի գոյությունը վիճարկվում է:

ՄԻՏՈԶ (հուն.՝ mitos – թել), բջջի կորիզի բաժանման եղանակ, որն ապահովում է մայր բջջի գենետիկ. նյութի համաչափ բաշխումը 2 դուստր բջիջներում և քրոմոսոմների հաջորդականությունը բջջ. սերունդների շարքում: Հաճախ Մ. է կոչվում ոչ միայն կորիզի, այլև ամբողջ բջջի բաժանման կենսընթացը (ցիտոտոմիա): Տես նաև *Մեյոզ*:

ՄԻՏՈՅԱՆ Աշոտ Արամայիսի (ծ. 1937), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (1990), պրոֆ. (1991): Աշխ-ները վերաբերում են էկոնոմիկայում բազմաչափ վիճակագրության վերլուծության տես. կիրառման, այդ թվում՝ մաթ. մոդելների կառուցման, բնակչության սոցիալ. վարքի տարբերակման խնդիրներին:

ՄԻՏՈՏԻԿ ԱՊԱՐԱՏ, *միտոզին* մասնակցող քրոմոսոմ. և արտաքրոմոսոմ. կառուցվածքների ամբողջություն, որն իրականացնում է քրոմոսոմների շարժումը դեպի կիսվող բջջի բևեռներ և ապահովում նրանց հավասարաչափ տեղաբաշխումը դուստր բջիջների միջև:

ՄԻՏՈՔՈՆԴՐԻԱՆԵՐ (< հուն. mitos – թել և chondrion – հատիկ), **քոնդրիոսոմներ**, բուս. և կենդ. բջջի կարևորագույն և մշտապես գոյություն ունեցող օրգանոիդներ: Նրանցում տեղի են ունենում օքսիդավերականգնման ռեակցիաներ, որոնք ապահովում են բջջի էներգիան: Մ-ի թիվը 1 բջջում տատանվում է միավորներից մինչև հազարներ: Պրոկարիոտներում բացակայում են (նրանց գործառույթը կատարում են կենսբ. թաղանթները):

ՄԻՏՉԵԼ (Mitchell) Մարգարետ (1900–1949), ամերիկացի գրող: «Քամուց քշվածները» (1936, կինոնկար՝ 1939) վեպը պատմություն է ուժեղ կնոջ սիրո և ապրելու մասին: Վեպի գլխ. հերոսուհու՝ Սքառլեթ Օ'Հարայի անունը դարձել է աննկուն կենսակայունության հոմանիշ՝ համադրվելով անհամեմատ անհատապաշտությանը («սքառլեթիզմ»): Պուլիցերյան մրց. (1937):

ՄԻՏՉԵԼ Պիտեր (1920–1992), անգլիացի կենսաքիմիկոս: Հետազոտել է կենսաէներգետիկ. կենսընթացները բջջում: Մշակել է քեմիոսմոտիկ տեսություն, որը բացատրում է ԱԵՖ-ի սինթեզի ժամանակ կենսբ. թաղանթում էներգիայի փոխակերպման մեխանիզմները: Նոբելյան մրց. (1978):

ՄԻՏՉԵԼ Ուեսլի Քլեր (1874–1948), ամերիկացի տնտեսագետ և վիճակագիր, քաղտնտ-յան հարվարդյան դպրոցի ներկայացուցիչ: Աշխ-ները վերաբերում են տնտ. ցիկլերի ու կոնյունկտուրայի վերլուծությանը, քաղտնտ-յան պատմությանն ու դրամաշրջանառությանը:

ՄԻՏՉԵՌԼԻԽ (Mitscherlich) Էյլհարդ Ալֆրեդ (1874–1956), գերմանացի ագրոքիմիկոս և բույսերի ֆիզիոլոգ: Գերմանիայի ԳԱ (1947, Բեռլին) և Գղտ. ակադ-ի (1951) ակադ.: 1949–55-ին եղել է ԳԱ բույսերի բերքատվության բարձրացման ինստ-ի տնօրեն: Բացահայտել է *իզոմորֆության* (նմանաձևության, 1819) և

երկձևության (1821) երևույթները: ԳԴեմՀ ազգ. մրց (1949):

ՄԻՏՐՈՊՈԼՍԿԻ Յուրի Ալեքսեևիչ (1917–2008), ուկրաինացի մաթեմատիկոս և մեխանիկոս: Ուկրաինայի ԳԱ ակադ. (1961), ՌԳԱ ակադ. (1984): Սոց. աշխ. հերոս (1986): Աշխ-ները վերաբերում են մաթ. ֆիզիկային և նրա կիրառումներին: Լենինյան մրց. (1965):

«ՄԻՏՔ», ազգ., հաս., գր., քաղ. շաբաթաթերթ (1912–14, Թավրիզ): Խմբ–հրտ.՝ Ալեքսանդր Տեր-Վարդանյան:

«ՄԻՔ», բազմանպատակ, ուղեծր., օդաչուավոր համալիր. նախատեսված է մերձերկրյա ուղեծրով թռչելու համար: Ստեղծվել է ԽՍՀՄ-ում՝ «Սալյուտ» կայանի կառուցվածքի հիման վրա: Ուղեծիր է դուրս բերվել 20.02.1986-ին: Հանդերձված է կցումնային 6 հանգույցներ ունեցող կցման համակարգով: Առլգն զանգվածը մոդուլներով՝ մոտ 124, 34 *տ*: Ուղեծրում եղել է մինչև 23.03.2001: «Մ.»-ում աշխատել են 28 հիմն. և 9 այցելու անձնակազմեր (105 տիեզերագնաց. 62-ը՝ արտասահմանցի՝ 11 երկրից), կատարվել է ավելի քան 22 հզ. հետազոտություն:

«ՄԻՔ», միջպետ. շուրջօրյա հեռուստառադիոընկ.: Ստեղծվել է 1992-ին: Հիմնադիրներն են ՍՊՀ անդամ 9 պետություններ (այդ թվում՝ ՀՀ-ն) և Վրաստանը: Կենտրոնը՝ Մոսկվայում: Անդամ պետություններում, Ս. Պետերբուրգում և Վլադիկավկազում գործում են հեռուստաընկ-յան մասնաճյուղեր: Հեռարձակումը՝ ռուս.:

«ՄԻՔ ԻՄԿՈՒՏՎԱ», ռուս. գեղ. միավորում (1898–1924), հիմնադրվել է Ս. Պետերբուրգում (հիմնադիրներ՝ Ա. Ն. Բենուա, Ս. Պ. Դյագիլև): Առաջ է քաշել «մաքուր» արվ-ի և արվ-ը որպես կյանքը «վերափոխող» կարևոր գործոնի սկզբունքները, մերժել ակադեմիզմը և պերեդվիժնիկների գաղ. ուղղվածությունը: Նկարիչների ու գրաֆիկների (Լ. Ս. Բակստ, Մ. Վ. Դոբուժինսկ, Ե. Ե. Լանսերե, Ա. Պ. Օստրոումովա-Լեբեդևա, Կ. Ա. Սոմով, Ի. Յ. Բիլիբին) գործերին հատուկ են նուրբ դեկորատիվությունը, ոճավորումը, նախշերը: «Մ. ի.»-ի վարպետներն ստեղծել են գրքի, էստամպի, թատեր. բարձրաճաշակ ձևավորումներ: Հրատարակել են նույնանուն ամենամսյա պատկերազարդ գր-գեղ. ամսագիր (1898/99–1904, Ս. Պետերբուրգ): «Մ. ի.»-ի ցուցահանդեսներին մասնակցել են Մ. Սարյանը, Ե. Թադևոսյանը, Գ. Յակուլովը:

ՄԻՔ ՋԱԼԱԼ (Միր Ջալալ Ալի օղլի Փաշաև, 1908–1978), ադրբեջանցի գրող, գրականագետ: Ադրբ. ԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1969): Հեղինակ է «Հարություն առած մարդը» (1935), «Մի երիտասարդի մանիֆեստը» (1937–39, հայ.՝ 1952), «Ո՞ւր են տանում ճամփաները» (1957) պատմավեպերի, նաև նովելների, երգիծ. պատմվածքների, քննադատ. աշխ-ների:

ՄԻՐ ՍԵՅԴ ԱԼԻ (մոտ 1510–1572-ից հետո), պարսիկ մանրանկարիչ: Թավրիզի մանրանկարչության դպրոցի ներկայացուցիչ [Նիզամու «Խամսե»-ի («Հնգամատյան»), պատկերազարդումներ, 1539–43], մոգոլ. մանրանկարչության դպրոցի հիմնադիրներից («Խամզանամե»-ի պատկերազարդումները, 1562–72):

ՄԻՐԱԲԻԼԻՏ (լատ.՝ mirabilis – զարմանահրաշ), **գլաուբերյան աղ**՝ $Na_2SO_4 \cdot 10 H_2O$, կոչվել է գերմանացի քիմիկոս Ի. Ռ. *Գլաուբերի* անունով: Անգույն է, սպիտակ, ապակու փայլով: Լուծվում է ջրում, լուծույթն ունի դառնաղի համ: Կարծր.՝ 1,5–2, խտ.՝ 1490 *կգ/մ*^{3}: Օգտագործվում է քիմ. արդ-յան մեջ սոդայի և կծու նատրիումի ստացման համար, ինչպես նաև բժշկության մեջ՝ որպես լուծողական:

ՄԻՐԱԺ (ֆրանս.՝ mirage), **օդատեսիլ**, 1 կամ մի քանի հեռավոր օբյեկտների (շենքեր, ծառեր ևն) ուղիղ կամ աղավաղված կեղծ պատկերների հայտնվելը մթն-ում: Պայմանավորված է մթն-ում լույսի բեկումով, որն առաջանում է օդի խտության անսովոր ուժեղ կախումից ուղղաձիգ (վերին և ստորին Մ.) կամ հորիզոն. (կողային Մ.) կոօրդինատներից:

ՄԻՐԱԽՈՐՅԱՆ Լևոն Սանուելի (1895–1978), նյարդահոգեբույժ, պարահոգեբան: Բժշկ. գիտ. դ-ր (1925), պրոֆ. (1930): Սանուել *Միրախորյանի* որդին: 1926-ին Կլուժում (Ռումինիա) հիմնել է Հոգեբ-յան և պարահոգեբ-յան ռում. ազգ. ընկ.: Աշխ-ները վերաբերում են հեռազգայության, ներշնչման, հիպնոսի և կատալեպսիայի երևույթներին:

ՄԻՐԱԽՈՐՅԱՆ Սանուել (1856–1934), ազգագրագետ, մանկավարժ: Լևոն *Միրախորյանի* հայրը: *Մկրտիչ Ա. Վանեցու* պատրիարքության ժամանակ (1869–73) եղել է նրա անձն. քարտուղարը: 1882-ին ուսումնասիրել է ղրիմահայերի ազգագրությունը և հաս. կյանքը (ձեռագիրը թուրք. կառ-յունը բռնագրավել է): 1883-ին Արմ. Հայաստանի Նինգ-ներում հավաքել է ազգագր., վիճակագր., պատմագր. հարուստ նյութ («Նկարագրական ուղևորութիւն ի հայաբնակ գաւառս...», մաս 1–3, 1884–85): XIX դ-ի վերջերին հաստատվել է Ռումինիայում, ծավալել մանկավարժ. գործունեություն:

ՄԻՐԱԶԱՅԱՆ Գեղեոն Բարսեղի (1859–1919), դերասան, մանկավարժ: Գևորգ *Միրազյանի* եղբայրը: 1884-ից՝ պրոֆեսիոնալ թատրոնի դերասան: Դերերից են՝ Պեպո, Գիժ Մոզի, Զամբախով, Իսայի (Գ. Սունդուկյանի «Պեպո», «Քանդած օջախ», «Խաթաբալա»), Բոբչինսկի (Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր»): 1889-ից «Գեղևանով» ազգանունով խաղացել է վրաց. բեմում:

ՄԻՐԱԶԱՅԱՆ Գևորգ Բարսեղի (1840–1875), մանկավարժ, դերասան: Գեղեոն *Միրազյանի* եղբայրը: 1864-ից (1867–69-ին՝ «Վահունի» բեմ. անվամբ) խաղացել է թատրոնում (Իսայի, Սուրաթով՝ Գ. Սունդուկյանի «Խաթաբալա», «Էլի մեկ զոհ», Ժոզեֆ՝ «Կարդինալ Ռիշելյե»): Գիքոյի (Գ. Սունդուկյանի «Պեպո») 1-ին դերակատարն է հայ բեմում (1871):

ՄԻՐԱՔ Ռոբերտ (ծ. 1933), հայազգի պատմաբան (ԱՄՆ): Աշխ-ները վերաբերում են ԱՄՆ-ի հայկ. համայնքի պատմությանը: Հեղինակ է «Երկու երկրների միջև. բաժանված հայերն Ամերիկայում (1890-ից մինչև 1-ին համաշխարհային պատերազմը)» (անգլ., 1983) աշխ-յան: «Միրաք» կալվածքի նախագահ (1977-ից):

ՄԻՐԱՔԼ (< լատ. mirakulum – հրաշք), միջնադար. կրոնաբարոյախոս. բովանդակությամբ չափածո դրամա: Տարածված է եղել XIII–XIV դդ-ում արևմտաեվրոպ. երկրներում: Մ-ին հատուկ են առասպել. թեմաները (Ժ. Բոդելի «Ս. Նիկողայոս», 1200, Ռյութբյոֆի «Միրաքլ Թեոֆիլի մասին», 1261):

ՄԻՐԱՔՅԱՆ Արմեն Բագրատի (ծ. 1938), կինոօպերատոր, կինոռեժ.: Հայֆիլմում նկարահանել է մուլտֆիլմեր («Սխալ արտահայտություն», 1973, «Սպորտ, սպորտ, սպորտ», 1974, «Շունն ու կատուն», 1975), նաև «Անուշ մայրիկը» (1983, գեղ.), «Սպիտակ քաղաք» (1988), «Խենթ հրեշտակը» (2000, երկուսն էլ՝ վավերագր.) և այլ ֆիլմերի օպերատորն է, «Հայաստանի քարերը» (1968, նաև սցենարի հեղինակ և օպերատոր), «Ժանսեմ» (2002) և այլ վավերաֆիլմերի ռեժ-ը:

ՄԻՐԱՔՅԱՆ Արմեն Վահանի (1962–2013), երգիչ (տենոր): Վահան Օ. *Միրաքյանի* որդին: 1998-ից ԵՕԲԹ-ի մեներգիչ (Առլեկինո՝ Ռ. Լեոնկավալլոյի «Պայացներ», ևն): Համերգ. երգացանկում՝ ռուս, իտալացի և այլ կոմպոզիտորների երգեր: Կոմիտասի անվ., իտալ. ռոմանսի (երկուսն էլ՝ 1996), «Սայաթ-Նովա» համահայկ. (2000, գլխ. մրց., երեքն էլ՝ Երևան) մրցույթների դափնեկիր:

ՄԻՐԱՔՅԱՆ Արշակ Իսրայելի (1929–1995), հոգեբան: Հոգեբ. գիտ. դ-ր (1988), պրոֆ. (1992): Տրանսցենդենտալ հոգեբ-յան հիմնադիրներից: Զբաղվել է մարդու տեսող. ընկալման տես. և փորձարար. ուսումնասիրություններով, տեսող. ընկալման մոդելավորման և հոգեբ-յան փիլ. խնդիրներով, հայտնաբերել հաստատունության-ոչ հաստատունության էֆեկտը:

ՄԻՐԱՔՅԱՆ (Միրաքյանց) Ենոք Իսահակի (1895–1938), մաշկաբան-վեներաբան: Բժշկ. գիտ. թեկնածու (1936): Հայաստանում մաշկավեներաբանության հիմնադիրներից: Միրա *Միրաքյանի* հայրը: Հետազոտությունները վերաբերում են սիֆիլիսին, գոնոռեային, բոր հիվանդությանը, մասնագիտ. մաշկախտերին, մաշկի տուբերկուլոզին, նաև հայ բժշկագիտ-յան պատմությանը: Անհիմն բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել (1980):

ՄԻՐԱՔՅԱՆ Միրա Ենոքի (ծ. 1929), մաշկավեներաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1990), պրոֆ. (1991): Ենոք *Միրաքյանի* դուստրը: Աշխ-ները վերաբերում են մաշկ., սնկիկային հիվանդություններին, մաշկավեներաբանության պատմության հարցերին: Մաշկավեներաբանների գիտ. ընկ-յան նախագահ (1990-ից), էկոլոգիայի և կենսագործունեության անվտանգության միջազգ. ԳԱ անդամ (2000):

ՄԻՐԱՔՅԱՆ Վահան Աղաբեկի, **Կոնո, Միր Կոնո** (1866–1942), բանաստեղծ: Վահան Օ. *Միրաքյանի* պապը: Հայտնի է «Լալուարի որսը» (1901) պոեմը, որի հիման վրա գրվել են երգեր, պիես, օպերա, նկարահանվել է կինոնկար: Հեղինակ է նաև «Առուակները», «Եփրատի կոյսը», «Հիւանդ մշակը», «Վերջին հոյս» և այլ բանաստեղծությունների, «Մանուշի հարսանիքը» (1927), «Խոզարածի կինը» (1928) և այլ պիեսների, «Սև կաթը» (1938) և այլ մանկ. պատմվածքների:

ՄԻՐԱՔՅԱՆ Վահան Օսիկի (1936–2014), երգիչ (քնարադրամատիկ. տենոր): ՀՀ ժող. արտիստ (1976): Վահան Ա. *Միրաքյանի* թոռը, Արմեն Վ. *Միրաքյանի* հայրը: Վիեննայի կոնսերվատորիայի պրոֆ., ԵՊԿ պատվ. պրոֆ. (2011): 1967–80-ին (ընդհատումներով)՝ ԵՕԲԹ-ի մեներգիչ (Սարո՝ Ա. Տիգրանյանի «Անուշ», Դուքս, Ալֆրեդ, Ռադամես՝ Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», «Տրավիատա», «Աիդա», Խոսե՝ Ժ. Բիզեի «Կարմեն», ևն): 1981-ից դասավանդել և ելույթներ է ունեցել Վիեննայում (1983-ին՝ Մ. *Կաբալիեի* հետ՝ Վ. Բելինիի «Նորմա» օպերայում): 2005-ից՝ Լոս Անջելեսում: Հանդես է եկել Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» և այլ օպերաներում:

ՀՀ ՄՆ «Կոմիտաս» և ոսկե (երկուսն էլ՝ 2011) մեդալներ:

ՄԻՐԱՔՈՎ, (Միրաքյան) Էդուարդ Սերգեյի (1930–2014), ճարտարագետ-մեխանիկոս: Տեխ. գիտ. թեկնածու (1973), պրոֆ. (1991): Աշխ-ները վերաբերում են տրակտորների դիզելների առանցքակալների հետազոտման և հուսալիության խնդիրներին: Ստացել է ալյումինի հիմքով նոր համաձուլվածք: ՌԴ արդ-յան ակադ-ի անդամ (1992):

Լենինյան մրց. (1982), ԽՍՀՄ Կարմիր աստղի շքանշան (2):

ՄԻՐԶԱ ՄԵԼՔՈՒՄ ԽԱՆ, Մալքոմ Խան (Մելքումյան Հովսեփ Հակոբի, 1833–1906), պետ. գործիչ, դիվանագետ, հրապարակախոս, գրող, լուսավորիչ: Պարսկ. նոր գրկ-յան ստեղծողներից է, սոցիալ. դրամատուրգիայի հիմնադիրը: 1858-ին հիմնադրել է «Ֆարամուշխանե» («Մոռացության տուն») ընկ-ը, որտեղ ընդգրկվել են ժամանակի առաջադեմ մտածողները: 1873-ից՝ Պարսկաստանի դեսպան Մեծ Բրիտանիայում, 1878-ին մասնակցել է *Բեռլինի վեհաժողովին*, նշանակվել է Պարսկաստանի դեսպան նաև Գերմանիայում: 1890–93-ին Լոնդոնում հրատարակել է «Կանուն» («Օրենք») պարսկ. պարբ-ը:

ՄԻՐԶԱ-ԱՎԱԳՅԱՆ Գրիգոր Լևոնի (1925–1984), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (1971), պրոֆ. (1973): Աշխ-ները վերաբերում են որովայնի խոռոչի օրգանների, կույր աղիի և արյան խոշոր անոթների վիրաբուժ. հիվանդություններին:

ՀԽՍՀ ԱՆ գլխ. վիրաբույժ (1975–84):

ՄԻՐԶԱ-ԱՎԱԳՅԱՆ Հարություն Գրիգորի (1879–1937), վիրաբույժ: Հայաստանում ժամանակակից վիրաբուժության հիմնադիրներից: Պրոֆ. (1935): 1924-ից՝ ԵՔԻ տեղագր. անատոմիայի և վիրահատ. վիրաբուժության ամբիոնի հիմնադիր-վարիչ: Աշխ-ները վերաբերում են արյան և ավշային համակարգերի, մակաբուծ. հիվանդությունների վիրաբուժությանը, սրտի վիրահատության տեխնիկային և արյան փոխներարկման խնդիրներին: 1927-ին ՀԽՍՀ-ում առաջինն է վիրահատել սիրտը և սրտամկանից հեռացրել հրազենի գնդակը: Անհիմն բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ Ալիկ Ռազմիկի (ծ. 1959), ՀՀ բանակի գեն-լեյտ. (2003): 1981–92-ին ծառայել է խորհրդ. բանակում, 1992–94-ին՝ ՀՀ ՊՆ սպառազինության վարչության պետի տեղակալ-շտաբի պետ, 1998–2000-ին՝ սպառազինության վարչության պետ: 2001–16-ին՝ պաշտպ-յան փոխնախարար: 2007–16-ին՝ նաև Նյութատեխ. ապահովման դեպարտամենտի պետ: Պաշտոնաթող է արվել: Մասնակցել է (1992-ից) Արցախյան ռազմ. գործողություններին:

ՀՀ և ԼՂՀ «Մարտական ծառայության համար» (1996, 2002), «Անբասիր ծառայության համար» 1-ին և 2-րդ աստիճանների (2003, 2007) մեդալներ, «Վարդան Մամիկոնյան» շքանշան (2005), ՀՀ վարչապետի հուշամեդալ (2006):

ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ Անահիտ Հովակիմի (1889–1983), մանրէաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1967), պրոֆ. (1967): ՀԽՍՀ վաստ. բժիշկ (1963): Հայկ *Միրզաբեկյանի* կինը, Էմիլ *Միրզաբեկյանի* մայրը: Ուսումնասիրել է ՀԽՍՀ-ում վարակիչ հիվանդությունների տարածվածության, պատճառագիտ-յան, համաճարակաբանության, նաև ընթացքի, տարածման ուղիների, հարուցիչների կենսբ. առանձնահատկությունները, ժանտախտի և խոլերայի ախտորոշման ու բուժման հարցերը:

ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ Էմիլ Հայկի (1922–1980), ռադիոֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. թեկնածու (1955): ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1974, թղթ. անդամ՝ 1970-ից): ՀԽՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1974): Հայկ և Անահիտ *Միրզաբեկյանների* որդին: 1960-ից՝ ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստ-ի տնօրեն, 1974–76-ին՝ ԳԱ ֆիզիկատեխ. գիտ-յունների և մեխանիկայի բաժանմունքի ակադ. քարտուղար, 1975–80-ին՝ փոխնախագահ: ԳԲՀ ռադիոֆիզիկայի հիմնադիրը Հայաստանում: Ստեղծել է էլեկտրամագնիս. ճառագայթման հետազոտման սարքերի նոր դաս, ուսումնասիրել Արեգակի ռադիոճառագայթումը: Աշխատակիցների հետ ստեղծած գերզգայուն ընդունիչ համակարգերը կիրառվել են տիեզ. հետազոտություններում:

ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ Ժորա (Գևորգ) Մկրտչի (ծ. 1932), էլեկտրաքիմիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1984), պրոֆ. (1986): ՀՀԱ թղթ. անդամ (1996): Աշխ-ները վերաբերում են ԲՀ մալուխների ու դիրքափոխված փաթույթների նոր կառուցվածքների նախագծման հարցերին: Մշակել է պարուրաձև հոսանքատար մեկուսացված լարերի էլեկտրամագնիս. դաշտի տեսությունը: Կազմել է «Ռուս-պարսկերեն պոլիտեխնիկական բառարան» (1973):

ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ Հայկ Հովհաննեսի (1893–1971), հիգիենիստ: Բժշկ. գիտ. դ-ր (1941), պրոֆ. (1942): Անահիտ *Միրզաբեկյանի* ամուսինը, Էմիլ *Միրզաբեկյանի* հայրը: 1959-ին Մ-ի նախաձեռնությամբ ստեղծվել է Աշխ-ի հիգիենայի (1971-ից՝ Ընդհ. հիգիենայի և մասնագիտ. հիվանդությունների) ԳՀԻ: Աշխ-ները վերաբերում են ՀԽՍՀ հանքարդ-յան, տեքստիլ և քիմ. արտադր. ձեռն-ների աշխ-ի հիգիենայի, մասնագիտ. հիվանդությունների արդ. թունաբանության, բանվորների աշխ. պայմանների բարելավման խնդիրներին:

ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ Ռաֆայել Ջավենի (ծ. 1950), հոգեբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (2003): Մշակել է նևրոզների և հոգեմարմն. հիվանդությունների բուժման մեթոդներ:

ՌԲՆԳԱ թղթ. (2002), ԵԳԱ (2003) անդամ: Մասնակցել է Չեռնոբիլի ԱԷԿ-ի վթարից տուժած աշխատակիցների հոգեֆիզ. վիճակի վերականգնման աշխ-ներին:

ՄԻՐԶԱԲԵԿՈՎ Անդրեյ Դարևիչ (1937–2003), ռուս. կենսաքիմիկոս: ՌԳԱ ակադ. (1987-ից): ԽՍՀՄ ԳԱ մոլ. կենսբ-յան ինստ-ի տնօրեն (1984-ից): Աշխ-ները վերաբերում են փոխադրող ՌՆԹ-ի կառուցվածքին և քրոմոսոմների ու այլ նուկլեոպրոտեիդների գործունեության մեխանիզմներին:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1969), Վ. Ա. Էնգելգարդի անվ. ոսկե մեդալ (1999), Ֆրանսիայի Պատվո լեգեոնի շքանշան (2004):

ՄԻՐԶԱԻ, միրզեի, հայկ. (որոշ առումով՝ կովկաս.) ժող. մենապար: Կատարել են տարեց կանայք հարսանիքների ժամանակ: Երաժշտ. չափը՝ 6/8, 3/8:

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ժիրայր Ավետիսի (1886–1947), պետ. գործիչ, իրավաբան, ՍԴՀԿ առաջնորդներից: Կառլեն *Միրզախանյանի* հայրը: 1921-ին ներգաղթել է: 1922–23-ին՝ Վճռաբեկ դատարանի նախագահ, 1925-ին՝ Գերագույն դատարանի դատախազ, 1926-ին՝ ՀԽՍՀ հողժողկոմի տեղակալ, 1934-ից՝ ՀԽՍՀ պետ. իրավարար:

ՄԻՐԶԱԽԱՆՈՎ, Միրզախանով, Իլարիոն Ավետի (1887–1960), ճարտարագիտ. ծառայության գեն-մայոր (1940): Մասնակցել է ԱՀՊ-ին: 1928-ից՝ ԽՍՀՄ ռազմ. արդ-յան բնագավառում (ռազմ. գործարանի փոխտնօրեն): 1940–45-ին՝ սպառազինության ժողկոմի տեղակալ: Զորացրվել է 1955-ին:

Լենինի, Կուտուզովի I և II աստիճանի, Կարմիր աստղի, Աշխ. կարմիր դրոշի շքանշաններ:

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Կառլեն Ժիրայրի (1923–2003), կրթամշակութ. գործիչ: Պատմ. գիտ. թեկնածու (1957), պրոֆ. (1991): ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (1983): Ժիրայր *Միրզախանյանի* որդին: Աշխ-նեը վերաբերում են հայ ժողդ-ի մասնակցությանը ՀՄՊ-ին:

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ռուբեն Կառլենի (ծ. 1959), հաս-քաղ., կրթամշակութ. գործիչ: Պատմ. գիտ. դ-ր (2008), պրոֆ. (2010): ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2009): 2001–03-ին՝ ՀՌԱԿ ատենապետ: 2003-ից՝ Հայաստանի ԹՄՄ կենտր. վարչության նախագահ: 2011-ից՝ ՀՊՄՀ-ի ռեկտոր: Աշխ-ները վերաբերում են Խորհրդ. Հայաստանի մշակույթի պատմությանը:

ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշան (2009):

ՄԻՐԶԱՅԱՆ Զորայր Հովսեփի (1916–1964), գրող, թարգմանիչ: Հովսեփ *Միրզայանի* որդին: Հեղինակ է «Թաց մայթը» (1957), «Բանաստեղծութիւններ եւ պատմուածքներ. Հատընտիր» (1965) ժող-ների, «Աբու Ալի Մինա» (1954), «Իրանի ժամանակակից բանաստեղծութիւնը» (1968) աշխ-ների: Հայ. է թարգմանել պարսկ., ռուս. և անգլ. հեղինակների գործեր:

ՄԻՐԶԱՅԱՆ Հովսեփ (1868–1935), մշակույթի գործիչ, թարգմանիչ: Զորայր *Միրզայանի* հայրը: Թարգմանել է Զ. Բայրոնի «Ծովահենը» և «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը», Վ. Սքոթի «Լմի լեդին» պոեմները, Հ. Լոնգֆելլոյի «Կյանքի սաղմոսը» բանաստեղծությունը, Վ. Հյուգոյի գործերից, Օմար Խայամի «Բարա Թահէր եւ զանազան» (1923) ժող-ը, որտեղ զետեղել է նաև այլ թարգմ-յուններ պարսկ-ից:

ՄԻՐԶԻՅՈՆՈՎ Շավքաթ Միրոմոնովիչ (ծ. 1957), ուզբեկ պետ. գործիչ, Ուզբեկստանի նախագահ՝ 2016-ից (սեպտ-դեկտ-ին՝ պաշտոնակատար), վարչապետ՝ 2003–16-ին:

ՄԻՐԶՈՎ Վլադիմիր Վլադիմիրովիչ (ծ. 1957), ռուս. ռեժ.: Բեմադրել է Ա. Ստրինդբերգի «Ֆրյոկեն Յուլիա» (1988), Ն. Վ. Գոգոլի «Ամուսնություն» (1994), «Խլեստակով» (1996, ըստ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր» կոմեդիայի), «Երկու կին» (1998, ըստ Ի. Ս. Տուրգենևի «Մի ամիս գյուղում» պիեսի), Է. Ռոստանի «Սիրանո դը Բերժերակ» (2001), Մոլիերի «Դոն Ժուան և Սգանարել» (2005) և այլ գործեր: Նկարահանել է «Սիրո նշաններ» (2006), «Մարդը, որը գիտեր ամեն ինչ» (2009) և այլ ֆիլմեր: ՌԴ Պետ. մրց. (2001):

ՄԻՐԶՈՅԱՆ Աշոտ Հովհաննեսի (1913–1990), նկարիչ: Պրոֆ. (1978): ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1956): 1938–45-ին՝ ԵՊՀԹ, 1948–63-ին՝ ԵՕԲԹ-ի գլխ. նկարիչ: Զևավորել է Կ. Գոլդոնիի «Երկու տիրոջ ծառան» (1945, ԵՊՀԹ) թատեր., Զ. Վերդիի

«Ռիգոլետտո» (1940), Ա. Տիգրանյանի «Անուշ» (1950), Հ. Ստեփանյանի «Հերոսուհին» (1950) օպերային, Ա. Խաչատրյանի «Սպարտակ» (1961, բոլորը՝ ԵՕԹԹ) բալետային և այլ ներկայացումներ: Հեղինակ է գեղանկարչ. գործերի («Արարատը կեսօրին», 1953, «Սևանա լեռներ», 1977, «Դաշտային ծաղիկներ», 1985, ևն):

ԽՀՀՄ Պետ. մրց. (1951), «Պատվո նշան» շքանշան:

ՄԻՐԶՈՅԱՆ Գարեգին Հովհաննեսի (1902–1990), նյարդախտաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1957), պրոֆ. (1958): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): ՀՄՊ–ի տարիներին ղեկավարել է Երևանի էվակոհոսպիտալի նյարդ. հիվանդությունների բաժանմունքը, եղել ՀԽՍՀ տարհանման հոսպիտալների գլխ. նյարդախտաբան: Աշխ–ները վերաբերում են կենտր. և ծայրամաս. նյարդ. համակարգերի վնասվածք. ախտահարումների տեղագր. ախտորոշման և բուժման խնդիրներին: ՀԽՍՀ ԱՆ գլխ. նյարդախտաբան (1957–76):

ԽՀՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան:

ՄԻՐԶՈՅԱՆ Գուրգեն Լևոնի (1911–1975), քամանչահար: ՀԽՍՀ ժող. արտիստ (1967): Շողիկ *Մկրտչյանի* ամուսինը: 1929–31–ին՝ Հայաստանի արլ. սիմֆ. նվագախմբի, ռադիոկոմիտեի ժող. գործիքների անսամբլի կոնցերտմայստեր և մենակատար, 1935–58–ին՝ Հայֆիլհարմոնիայի ժող. գործիքների անսամբլի ղեկ.:

ԽՀՀՄ «Պատվո նշան» շքանշան (2):

ՄԻՐԶՈՅԱՆ Գուրգեն Հովհաննեսի (1892–1976), կոմպոզիտոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1950): 1937–39–ին՝ Հայֆիլհարմոնիայի ժող. գործիքների նվագախմբի ղեկ.: Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում կազմակերպել է արլ. գործիքագիտ–յան և գործիքավորման դասընթաց: Հեղինակ է սիմֆոնիայի, դաշնամուր. պիեսների, նաև լար. կվարտետի (1950), թառի կոնցերտի (1954), քամանչայի ֆանտազիայի (1956), ժող. գործիքների նվագախմբի համար երկերի:

ԽՀՀՄ «Պատվո նշան» շքանշան:

ՄԻՐԶՈՅԱՆ Զավեն Ալեքսանդրի (1917–1994), հրթիռատիեզ. տեխնիկայի բնագավառի գիտնական: ԽՀՀՄ–ում բարձր ճշգրտության հոլակային (գիրոսկոպ.) սարքերի ստեղծման բնագավառի հիմնադիրներից: 1960–70–ին՝ ԽՀՀՄ ՊՆ գլխ. վարչության պետի տեղակալ: Ղեկավարել է հրթիռների, ուղեծր. կայանների և տիեզ. ապարատների կառավարման համակարգերի սարքավորումների մշակման աշխ–ները, մասնակցել է երկրի 1–ին արհեստ. արբանյակների արձակմանը, 1–ին տիեզերագնացների թռիչքների իրագործմանը: ԽՀՀՄ Պետ. մրց. (1969):

ՄԻՐԶՈՅԱՆ Էդվարդ Միքայելի (1921–2012), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1958): ՀՀ (1963), ԽՀՀՄ (1981) ժող. արտիստ: ԵՊԿ պրոֆ. (1965): ՀԿՄ վարչության նախագահ (1956–91, 1994–ից՝ պատվ.): Միքայել *Միրզոյանի* որդին: Գրել է Ջութակի և դաշնամուրի սոնատ (1939), ռոմաններ (խոսք՝ Ա. Իսահակյանի, 1939–41, Ե. Չարենցի, 1987), սիմֆ. պարեր (1945), «Տոնական նախերգանք», կվարտետ (երկուսն էլ՝ 1947), «Ինտրոդուկցիա և անընդհատ շարժում»՝ ջութակի և նվագախմբի համար (1957), սիմֆոնիա՝ լար. նվագախմբի և լիտավրների համար (1962), թավջութակի սոնատ (1967), պոեմ՝ դաշնամուրի համար (1970), Պոեմ–էպիտաֆիա՝ կամեր. նվագախմբի համար (1988), կինոերաժշտություն («Քառս», 1974, «Հեղկոմի նախագահը», 1977, «Թիվ 011 աքսորականը», 1978, «Խաչմերուկի դեղատունը», 1987, բոլորն էլ՝ Հայֆիլմ, ևն): 1977–ից՝ Հայաստանի խաղաղության հիմնադրամի վարչության (2009–ից՝ պատվ.) նախագահ:

ՀԽՍՀ ՄՆ Ա. Խաչատրյանի անվ. մրց. (1988), ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ», ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2001) և ՀՀ «Պատվո շքանշան» (2011), «Կիրիլ և Մեֆոդի» (1971, Բուլղարիա), «Պետրոս Մեծ» (2005, Հանձնվեր) շքանշաններ, ՀՀ «Մովսես Խորենացի» (1998) և այլ մեդալներ:

ՄԻՐԶՈՅԱՆ Էդուարդ Նիկոլայի (1931–2014), կենսաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1972): Աշխ–ները վերաբերում են ընտրասերման և տես. կենսբ–յան պատմությանը, աշխարհի էվոլյուցիայի ձևափոխության հարցերին: Մոսկվայի բնախույզների միության նախագահության, ՌԲՆԳՄ բնագիտ–յան և տեխնիկայի բաժանմունքի ակադ. քարտուղար (1996–ից), Նյու Յորքի ԳԱ (1994–ից), ԱՄՆ–ի ազգ. աշխարհագր. ընկ–յան (1996–ից) անդամ:

ՄԻՐԶՈՅԱՆ (Միրզոևա) Թերեզա Հայկի (1922–2016), քանդ.: Պրոֆ. (1987): ՀՀ վաստ. նկարիչ (1967): ՀՀ արվ. վաստ. գործիչ (1986): Հեղինակ է «Կծով աղջիկը» (1962), «Ջուլհակուհին» (1964), Չարենցական ք–ի մուտքի հուշակոթողի (1970, Սուրեն *Նազարյանի* հետ), «Սպասում» եռաքանդակի (1985), աստվածաշնչ. թեմայով՝ «Վիշապահաղթ հրեշտակապետ Միքայելը» (2001) քանդակի ևն:

ՄԻՐԶՈՅԱՆ Լավրենտի Աշոտի (ծ. 1950), լեզվաբան, խմբ.: Մանկավարժ. գիտ. թեկնածու (2006), պրոֆ. (2006): 1987–90–ին՝ «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» ամսագրի գլխ. խմբ., 2003–04–ին՝ *«Քաղաքացիական ծառայություն»* շաբաթաթերթերի հիմնադիր–խմբ.: 2004–10–ին՝ ՀՀ լեզվի պետ. տեսչության պետ: Հեղինակ է «Երևելի Մխիթարյանները» Մանուել Քաջունի» (2005) մենագրության, «Հավերժության ղողանջներ» (2009) ակնարկների, «Տավուշ» (2010) հանրագիտ. ժող–ների, «Կայացման ակնթարթներ» (2014) տարեգրքի, դպրոց. բառարանների ևն:

ՀԺՄ «Տարվա լավագույն ակնարկ» մրց. (1986), ՀՀ ՄՆ (2007) և ԼՂՀ «Երախտագիտություն» (2013), ՀՀ ԿԳՆ (2007) ոսկե մեդալներ, Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2007):

ՄԻՐԶՈՅԱՆ Լյուդվիգ Վասիլի (1923–1999), աստղաֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1968), պրոֆ. (1970): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1986–ից): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (1974): *«Ապրոաֆիզիկա»* հանդեսի գլխ. խմբ. (1987–98): Կատարել է ջերմ. գերհսկա աստղերի ԱՄՃ սպեկտրների՝ ԽՀՀՄ–ում առաջին հետազոտությունները: Ցույց է տվել, որ աստղախմբերին հատուկ է շարժուն. անկայունությունը, որ անկայուն թզուկ աստղերի արագ փոփոխությունների ժամանակ դիտվող ավելցուկային ճառագայթումն ունի ոչ ջերմ. բնույթ:

ՄԻՐԶՈՅԱՆ Լևոն Եսայու (1897–1939), կուս. և պետ. գործիչ: 1921–25–ին՝ Ադրբ. կոմկուսի Բաքվի կոմիտեի, 1925–29–ին՝ ԿԿ 1–ին քարտուղար: 1933–ից՝ կուս–յան Ղազախստանի երկրկոմի քարտուղար, 1937–ից՝ ԿԿ 1–ին քարտուղար: 1936–38–ին Մ–ի անունով է կոչվել ներկայի Ջամբուլ ք–ը: Բռնադատվել է, գնդակահարվել, հետագայում՝ արդարացվել:

ՄԻՐԶՈՅԱՆ Կառլեն Գալուստի (ծ. 1937), դիրիժոր, բանահավաք, թառահար: 1952–1956–ին՝ Վարդան Բունիի լար. քառյակում, 1972–76–ին՝ Հայաստանի պարի անսամբլի երաժշտ. մասի ղեկ.: Ժող. գործիքների նվագախմբի (1977, 1977–80–ին՝ գլխ. դիրիժոր), «Տկզար» անսամբլի (1982, 1982–2001–ին՝ գեղ. ղեկ. և դիրիժոր) հիմնադիրը, 2001–ից՝ Լոս Անջելեսի «Հայ քնար» ժող. գործիքների անսամբլի ղեկ.:

ՄԻՐԶՈՅԱՆ Հոկսեն (Օգսեն) Առաքելի (ծ. 1961), ծանրորդ, մարզիչ: ԽՀՀՄ ս. վ. վ. (1984): Օլիմպ. խաղերի (1988), աշխարհի (1983), Եվրոպայի (1983), ԽՀՀՄ ժողդ–ների սպարտակիադաների (1983, 1991), ԽՀՀՄ (1982, 1974–86, 1988) չեմպիոն: Թեթևագույն քաշում սահմանել է 13 ռեկորդ: ՀՀ ծանրամարտի ազգ. ֆեդերացիայի նախագահ (1996), ազգ. հավաքականի մարզիչ (1998): Նվաճել է 56 ոսկե մեդալ:

Աշխարհի առաջնության «Ոսկե կիլոգրամներ» մրց. (1983, Մոսկվա), ԽՀՀՄ ժողդ–ների բարեկամության շքանշան (1983), ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (1997):

ՄԻՐԶՈՅԱՆ Հրանտ Սերգեյի (ծ. 1962), գեղանկարիչ: Հեղինակ է «Տեսիլք» (2005), «Հորինվածք» (2010), «Գիշեր» (2012), «Երկխոսություն» (2014), «Գիշերային հանդիպում», «Առավոտ» (երկուսն էլ՝ 2016) և այլ կոմպոզիցիաների:

ՄԻՐԶՈՅԱՆ Հրաչիկ Ղազարի (ծ. 1940), փիլ.: Փիլ. գիտ. դ–ր (1984), պրոֆ. (1987): Աշխ–ները վերաբերում են XVII դ–ի հայ փիլ–յան ու մշակույթի պատմությանը, փիլ–ների վրա Դավիթ Անհաղթի ազդեցությանը, հայ–վրաց., հայ–իրան. փիլ. կապերին, Հովհաննես Սարկավագի և Գրիգոր Նարեկացու մատենագր. ժառանգությանը, XVIII դ–ի հնդկահայ լուսավորականության ազգ. գաղ. ակունքներին: ԵՊՀ ոսկե հուշամեդալ (1999):

ՄԻՐԶՈՅԱՆ Ղազար Հրանտի (ծ. 1961), գեղանկարիչ: Հեղինակ է «Մեծ պայթյուն», «Եվ խավարի վրա պտտվում է Աստծո հոգին» (երկուսն էլ՝ 2008), «Սուրբ Պետրոսի աքաղաղը» (2014), «Խաչելություն», «Գեթսեմանի այգու աղոթքը», «Այդեբան» (երկուսն էլ՝ 2015), «Խոյի համաստեղություն», «Ցուլի համաստեղություն» (երկուսն էլ՝ 2016) և այլ գործերի: Ֆրիտյոֆ Նանսեն հիմնադրամի ոսկե (2011), «Սբ Գրիգոր Լուսավորիչ» (2012, Լեհաստան) հուշամեդալներ:

ՄԻՐԶՈՅԱՆ Միքայել Հովհաննեսի (1888–1958), կոմպոզիտոր, խմբավար: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1939): Էդվարդ *Միրզոյանի* հայրը: Հեղինակ է հիմնականում կամեր. երկերի, մանկ. երգերի («Տոնածառ ջան, տոնածառ», «Ծիտիկի երգը» ևն), խմբերգերի, ռոմանսների, էպիկ. բալլադի («Սասունցի Դավիթ»), մանկ. երաժշտ. պատկերների («Ծիտն ու սազը», «Ճպուռն ու մրջյունը» ևն), «Նոտային գրագիտության դասագիրք»–ի (1935), «Երաժշտական գրագիտության և երգի ձեռնարկ»–ի (1955) ևն: ԽՀՀՄ «Պատվո նշան» շքանշան:

ՄԻՐԶՈՅԱՆ Նարինե Ռուբենի (ծ. 1962), դեղաբան: Բժշկ. գիտ. դ–ր (2009): Ռուբեն *Միրզոյանի* դուստրը: ՀՀ ԱՆ գլխ. կլինիկ. դեղաբան (2016–ից): Աշխ–ները վերաբերում են ուղեղասրտանոթ. խանգարումների դեղաբան. շտկման խնդիրներին:

ՄԻՐԶՈՅԱՆ Ռադիկ Մկրտչի (1938–2008), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1987): Աշխ–ները վերաբերում են տնտ. մեխա–նիզմների կատարելագործման, տնտհաշ–վարկի, շահութաբերության, արդ–յան և առևտրի տնտ. կապերի խնդիրներին:

ՄԻՐԶՈՅԱՆ Ռուբեն Սիմոնի (ծ. 1938), դեղաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1977), պրոֆ. (1995): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (2008–ից): ՌԴ գիտ. վաստ. գործիչ (2011): Սիմոն ***Միրզոյանի*** և Ելենա ***Գասպարյանի*** որդին, Նարինե ***Միրզոյանի*** հայրը: «Էք–սպերիմենտալ և կլինիկական ֆարմակո–լոգիա» (ռուս., Մոսկվա) ամսագրի պատ. քարտուղար (1986–ից): Ուսումնասիրութ–յունները վերաբերում են ուղեղի իշեմիկ և արյունազեղում. ախտահարումների ժամանակ ուղեղի անոթների լարվածութ–յան նյարդամիջնորդանյութային կենսըն–թացների վերլուծությանը, ուղեղի և սրտի համակցված անոթ. ախտահարումների դեղաբան. շտկմանը:

ԽՍՀՄ ԺՏՆՑ արծաթե (1989), ՌԴ «Հայ–րենիքին մատուցած ծառայությունների համար» 2–րդ աստիճանի (2004) մեդալներ:

ՄԻՐԶՈՅԱՆ Սամվել Ալեքսանի (1918–2010), կենսաբան–միջատաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1973), պրոֆ. (1988): Աշխ–ները վերաբերում են անտառի պաշտպ–յան, ծառերի և թփերի վնասատուների հիմն. տեսակների կենսակերպի խնդիրներին: Կազմել է կենդանաաշխարհագր. ու շրջանացման քարտեզներ:

Բնության պահպանության միջազգ. խորհրդի՝ միջատների պաշտպ–յան բա–ժանմունքի նախագահ (1972–93), ԽՍՀՄ Կարմիր գրքի խմբագր. հանձնաժողովի անդամ և 2–րդ հրտ–յան համահեղինակ: Միջազգ. տեղեկատվայնացման ակադ–ի անդամ (1995):

ՄԻՐԶՈՅԱՆ Սերգեյ Սպարտակի (ծ. 1977), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (2010): Սպար–տակ ***Միրզոյանի*** որդին: 2017–ից՝ Երևանի գլխ. վիրաբույժ: Աշխ–ները վերաբերում են ստամոքսաղիք. համակարգի օրգանների վերակառուցողավերականգնող. վիրա–հատությունների, ճողվածքների վիրաբուժ. բուժման կատարելագործման, ախտորոշիչ և բուժ.նորագույն տեխնոլոգիաների ու ըն–դերատեսաորովայնագիտման հարցերին:

ՄԻՐԶՈՅԱՆ Սիմոն Հակոբի (1910–1993), դեղաբան: ՀՀ–ում դեղաբանության դպրոցի հիմնադիրներից: Բժշկ. գիտ. դ–ր (1942), պրոֆ. (1943): Էլենա ***Գասպարյա–նի*** ամուսինը, Ռուբեն ***Միրզոյանի*** հայրը: ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1966): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): 1936–88–ին՝ ԵԲԻ դեղաբանության ամբիոնի հիմ–նադիր–վարիչ: Մ–ի ղեկավարությամբ հայտնաբերվել է ալկալոիդներ պարու–նակող 65 դեղաբույս: Պարզաբանել է (Վիուլեն ***Հակոբյանի*** հետ) նյարդաքիմ. գործոնների դերը գլխուղեղի արյան շրջանառության կարգավորման գործում: ՀՀ ԱՆ գիտաբժշկ. խորհրդի նախագահ (1971–78), ՀՀ դեղաբանների ընկ–յան հիմ–նադիր–նախագահ (1960–93):

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան:

ՄԻՐԶՈՅԱՆ Սպարտակ Հովհաննեսի (ծ. 1952), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (2008), պրոֆ. (2011): Սերգեյ ***Միրզոյանի*** հայրը: Աշխ–ները վերաբերում են որովայնի խոռոչի օրգանների, ստամոքսաղիք. համակարգի վիրահատությունների կա–տարելագործման նորագույն տեխնոլոգ. խնդիրներին:

ՄԻՐԶՈՅԱՆ Ստեփան Վահանի (1945–2013), ՀՀ բանակի գեն–լեյտ. (2004): 1993–2000–ին՝ ՀՀ ՊՆ կադրերի վարչության, սպայական հրամ. դասընթացների պետ, բանակ. զորամիավորման հրամ., 2000–2007–ին՝ ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվ. ռազմ. ինստ–ի պետ: Մասնակցել է ՀՀ սահմա–նամերձ շրջանների ինքնապաշտպ–յանը:

ՀՀ «Մարտական խաչ» 2–րդ (2001), «Հայրենիքին մատուցած ծառայություն–ների համար» 1–ին (2006) աստիճանների շքանշաններ:

ՄԻՐԶՈՅԱՆ Վալերի Արմենակի (ծ. 1948), փիլ.: Փիլ. գիտ. դ–ր (2011), պրոֆ. (2012): Աշխ–ները վերաբերում են աշխ–ի կազ–մակերպման, կառավարման փիլ–յան և ճարտասանության հարցերին:

ՄԻՐԶՈՅԱՆ Վաղինակ Սրապիոնի (1926–1997), նյարդաֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ–ր (1990): Աշխ–ները վերաբերում են նյարդ. համակարգի ներկենտր. վերա–կառուցման տարիք. առանձնահատկութ–յուններին: Զբաղվել է նաև ողնաշարավոր կենդանիների աչքի ցանցաթաղանթի վերականգնող. շարժընթացների, կենսա–հոսանքների առաջացման, ձևավորման և զարգացման օրինաչափությունների հարցերով: Նյու Յորքի ԳԱ (1996) և Բնա–պահպանության և կենսագործունեութ–յան անվտանգության միջազգ. ակադ–ի (1996) անդամ:

ՄԻՐԶՈՅԱՆ (Միրզոն) Վասիլի Զուրաբի (1863–1925), ճարտ–ճարտարագետ: Հե–ղինակ է Երևանի նահանգապետարանի (1900), նահանգ. գանձատան և պետ. պա–լատի (1901), պետրանկի երևանյան բա–ժանմունքի (1902), ուսուցչ. սեմինարիայի (1905), արական գիմնազիայի (1917–20), Սբ Անանիա մատուռի (1900–ական թթ.), Վարդենիսի, Նոր Բայազետի (երկուսն էլ՝ XIX–XX դդ.), Քանաքեռի (1913), Ալեքսանդ–րապոլի (1910–ական թթ.) եկեղեցիների, Էջմիածնի մանկավարժ. թանգարանի (XIX–XX դդ.) նախագծերի: Կառուցել է նաև Երևանի (1911), Իգդիրի, Նոր Բայա–զետի, Օրդուբադի գրատները, Երևանի ձիաքարշ տրամվայի գիծը (1906):

ՄԻՐԶՈՅԱՆ Վարդան Միրզոյի (1877–1968), դերասան, մանկավարժ, թատեր. գոր–ծիչ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1949): 1919–ին Երևանում հիմնադրել է թատեր. ստուդիա: 1929–52–ին՝ ԵՊՀԹ–ի դերասան (Բազազ Արտեմ՝ «Գիքոր»՝ ըստ Հ. Թումանյանի, Ծերունի Մոոդ՝ Ֆ. Շիլլերի «Ավազակներ», ևն): Նկարահանվել է կինոյում («Վեց հա–մազարկ», 1937, Հայֆիլմ, ևն): Հեղինակ է «Թատերական օրագրեր» (1966) ժող–ի:

ՄԻՐԶՈՅԱՆ Փարավոն Միքայելի (ծ. 1949), նկարիչ: Պրոֆ. (1995): ՀՀ արվ. վաստ. գործիչ (2006): ՀՀ ժող. նկարիչ (2014): 2002–15–ին՝ ՀԱՊ–ի տնօրեն: Հե–ղինակ է «Աննայի դիմանկարը» (1982), «Աշնան բանաձևը» (1994), «Երկնագույն ռապսոդիա» (1997), «Գառնիի ձորում» (2003), «Նատյուրմորտ» (2005) և այլ գործերի: Ս. Պետերբուրգի գիտ–յունների և արվ–ի Պիոտրովսկի ակադ–ի անդամ (2006): ՀՀ Պետ. մրց. (2007), «Ֆրանսիա–յի մշակույթի և գրականության ասպետ» շքանշան (2008), ՀՀ ՄՆ ոսկե (2005), Ա. Բակունցի անվ. (2005), Ֆրիտյոֆ Նան–սենի հիմնադրամի ոսկե (2009) մեդալներ:

ՄԻՐԻՄԱՆՅԱՆ Գևորգ, **Եգոր** (1831–1853), բանաստեղծ, մշակույթի գործիչ: Հեղինակ է երգերի. առավել հայտնի է «Հայոց աղ–ջիկներ, ձեր հոգուն մատաղ» երգը:

ՄԻՐԻՄԱՆՅԱՆ Խաչիկ Պողոսի (1899–1979), հողագետ: Գեղտ. գիտ. դ–ր (1940), պրոֆ. (1940): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1959): ***«Հայաստանի բնություն»*** ամսա–գրի գլխ. խմբ. (1959–76): Աշխ–ները վե–րաբերում են ՀՀ հողերի դասակարգման, նոր հողերի իրացման, աղուտների, կի–սաանապատ., ճահճային հողերի բարե–լավման, բնապահպանության հարցերին:

ՀՀ բնության պահպանության ընկ–յան նախագահ (1958): Լեռն. երկրների բնութ–յան պահպանության միջազգ. կոմիտեի նախագահ (1969–75):

ՄԻՐԻՄԱՆՅԱՆ (Միրիմանովա) Մարգա–րիտ Իվանի (1894–1985), դաշնակահարու–հի: 1921–ից՝ արտերկրում (1945–ից՝ Փարի–զում), հանդես է եկել որպես մենակատար, նաև անսամբլների, սիմֆ. նվագախմբի հետ: Նվագացանկում՝ Ֆ. Շոպենի, Ֆ. Շուբերտի, Ա. Ն. Սկրյաբինի, Կոմիտասի, Ա. Խաչատրյանի երկերից: Բոլոնիայի ֆիլ–հարմոնիկ ակադ–ի դիպլոմ (1930):

ՄԻՐԻՋԱՆՅԱՆ Ավետիք Արտաշեսի (1935–1994), ճարտ.: Համահեղինակ է Արթիկի, ՀՀ մի շարք քաղաքների, նաև Գյումրիի (1987) գլխ. հատակագծերի, Բուժականում՝ ԱԷԿ–ի հանգստի գոտու համալիրի (1974), Մեծամորի կենտր. գոտու կառուցապատման (1974) և երկ–դահլիճ մարզահամալիրի (1975), Աղ–վերանի հանգստի գոտու, Նոյեմբերյա–նի, Չարենցավանի (1977), «Կումայրի» պատմաճարտ. արգելոց–թանգարանի վերակառուցման (1990, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1985) մանրամասն նախագծերի, Մեղրու (1982), Ախուրյանի (1987) հատակագծերի:

ՄԻՐԻՋԱՆՅԱՆ Լևոն Վարդանի (1933–2004), բանաստեղծ, թարգմանիչ, գրա–կանագետ, խմբ.: 1995–97–ին՝ «Բնօրրան» և «Արևագալ» պարբ–ների գլխ. խմբ.: Հեղինակ է «Այգեստաններ» (1958), «Ճանապարհ» (1975), «Բազումք» (1989), «Հոգի և մարմին» (2003), «Ուրախ հան–դիպում» (2005), «Ակնաղբյուր» (2007) բանաստեղծությունների ու պոեմների, «Սրբազան ավանդներ» (2006) հոդված–ների, գրախոսությունների ու նամակների և այլ ժող–ների, «Կրկնվող օրեր» (2004) վիպակի, «Մենք գնացինք Երկիր» (1992), «Հայկական հնագույն մատյանը» (1981), «Հայկյաններ» (1988), «Աստվածաշունչը և մենք» (1994), «Իմ Շնչենկոն» (2002) աշխ–ների: Թարգմանել է Գ. Ս. Սկովորոդայի «Հատընտիրը» (1972):

Ուկրաինայի Գ. Ս. Սկովորոդայի անվ. մրց. (1993):

ՄԻՐԻՋԱՆՅԱՆ Մուշեղ Միասիկի (ծ. 1956), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1997), պրոֆ. (2005): Աշխ–ները վերաբերում են ստա–մոքսաղիք. համակարգի վիրաբուժ. հիվան–դությունների և որովայնի ճողվածքների ախտածագմանն ու բուժման խնդիրներին:

Հայաստանի վիրաբուժ. ԳԱ անդամ:

ՀՀ «Մխիթար Հերացի» (2010), ԵՊԲՀ ոսկե (2000) մեդալներ:

ՄԻՐԻՋԱՆՅԱՆ Վերջալույս Կարապետի (1916–1992), դերասանուհի: ՀՀ վաստ. արտիստ (1962): Գևորգ ***Ասլանյանի*** կի–նը, Հրաչյա ***Ասլանյանի*** մայրը: 1952–ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասանուհի (Շուշան՝ Գ. Սունդուկյա–նի «Պեպո», Արքայամայր՝ Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ», Տիկին Սինտեգյու՝ Վ. Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ», ևն): 1957–ից նկարահանվել է կինոյում («Հարսնա–ցու հյուսիսից», 1975, «Հին օրերի երգը»,

1982, «Ընկեր Փանջունի», 1992, երեքն էլ՝ Հայֆիլմ, ևն):

ՄԻՐՄԵԿՈՒԹԻԱ (< հուն. myrmex – մրջյուն և choreo – տեղաշարժվել), ուտելի ելունդներ ունեցող բույսերի (մանուշակ, կանթեղախոտ և հատկապես՝ անտառ. բույսեր) սերմերի տարածումը մրջյունների միջոցով:

ՄԻՐՇԱՔԱՐ (Միրշաքարով) Միրսաիդ (1912–1993), տաջիկ գրող: Տաջիկ. ԽՍՀ ժող. բանաստեղծ (1962): 1961–75-ին՝ Տաջիկ. ԽՍՀ ԳԽ նախագահ: Տաջիկ. մանկ. գրկ-յան հիմնադիրներից: Հեղինակ է «Ոսկե դշլաղ» (1942), «Անհնազանդ Ֆյանջը» (1949), «Սեր և պարտք» (1962) և այլ պոեմների, «Ճակատամարտ անապատում» (1974) և այլ պիեսների:

ԽՍՀՄ (1950, կրկնակի), Տաջիկ. ԽՍՀ Ա. Ռուդաքիի անվ. (1967) պետ., Տաջ. ԼԿԵՄ (1972) մրց-ներ:

ՄԻՐՈՑ ԱՍԱԴ (Մնտոյան Միքո Ասադի, 1919–2008), քուրդ գրող, խմբ.: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (1970): 1955–89-ին՝ *«Ռյա թազա»* (քրդ.) թերթի խմբ.: Հեղինակ է «Սիսե» (1961) պատմվածքների, «Հայրենիքի զավակը» (1969), «Սրտի զգացումը» (1973, հայ.՝ 1973) բանաստեղծությունների ժող-ների: Քրդ. է թարգմանել Հ. Թումանյանի, Ե. Չարենցի և ուր. գործերից: ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքանշաններ:

ՄԻՐՈՅԱՆ Հովսեփ Միհրանի (ծ. 1974), ակնաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (2010): 2007-ից՝ ՀՀ ԶՈՒ ակնաբուժ. ծառայությունների ղեկավար: Աշխ-ները վերաբերում են ակնաբուժ. ծառայության կազմակերպմանը ԶՈՒ-ում, կատարակտի բուժման վիրահատ. մեթոդներին: ՀՀ ՊՆ «Անդրանիկ Օզանյան» մեդալ (2010):

ՄԻՐՈՆՆԵՐ, բարբուններ, ծածանաձկների ընտանիքի ձկների սեռ: Ունեն 2 զույգ բեղեր: Առլձն երկ.՝ մինչև 1 *մ*, կ. գ.՝ մինչև 20 *կգ*: Ապրում են Աֆրիկայի և Եվրասիայի քաղցրահամ ջրերում: Կան գաղթող ձևեր: Արդյունագործ. ձուկ է:

ՄԻՐՈՆՈՎ Անդրեյ Ալեքսանդրովիչ (1941–1987), ռուս. դերասան: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1980): 1962-ից՝ Մոսկվայի սատիրայի թատրոնի դերասան (ժադով՝ Ա. Ն. Օստրովսկու «Եկամտաբեր պաշտոն», Ֆիգարո՝ Պ. Օ. Բոմարշեի «Ֆիգարոյի ամուսնությունը», Չացկի՝ Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս», Խլեստակով՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», ևն): Բեմադրել է Ա. Ն. Օստրովսկու «Կեղտոտ փողեր» (1981) և այլ գործեր: Նկարահանվել է կինոյում («Զգուշացիր ավտոմեքենայից», «Ադամանդե ձեռքը», «Սովորական հրաշք», վերջինը՝ հեռուստաֆիլմ) ևն:

ՄԻՐՈՆՈՎ Եվգենի Վիտալիևիչ (ծ. 1966), ռուս. դերասան: ՌԴ ժող. արտիստ (2004): 1990–2006-ին՝ Մոսկվայի Օ. Պ. Տաբակովի ղեկավարած թատրոնի դերասան, 2006-ից՝ Ազգերի պետ. թատրոնի գեղ. ղեկ.: Նկարահանվել է «Սեր», «Լիմիտ», «Մահմեդականը», «Մայրիկ», «44-ի օգոստոսին...», «Ապուշ» (հեռուստասերիալ), «Ինչպե՞ս եք, ծածաններ» և այլ ֆիլմերում, խաղացել թատրոնում (Օրեսթես՝ Էսքիլեսի «Օրեսթես», Իվան՝ «Կարամազովները և դժոխքը»՝ ըստ Ֆ. Մ. Դոստոևսկու, Պորֆիրի՝ «Պարոնայք Գոլովլյովները»՝ ըստ Մ. Ե. Սալտիկով-Շչեդրինի, ևն): ՌԴ Պետ. մրց. (1996, 2010):

ՄԻՐՈՆՈՎ Սերգեյ Պավլովիչ (ծ. 1948), ռուս. վնասվածքաբան-օրթոպեդ: ՌԳԱ (2002), ՌԲԳԱ (1999) ակադ.: ՌԴ գիտ. վաստ. գործիչ (1994), վաստ. բժիշկ (1996): Մոսկվայի Վնասվածքաբանության և օրթոպեդիայի կենտր. ինստ-ի տնօրեն (1998-ից): Աշխ-ները վերաբերում են ոսկրամկան. համակարգի ֆունկցիոնալ առանձնահատկություններին, հենաշարժ. ապարատի վնասվածքների համակարգմանը: ՌԴ Պետ. (1997), Կառ-յան (1997) մրց-ներ:

ՄԻՐՈՇՆԻԿՈՎ Անատոլի Իվանովիչ (ծ. 1940), ռուս. մոլ. կենսաբան: ՌԳԱ ակադ. (2000, թղթ. անդամ՝ 1994-ից): ՌԳԱ Պուշչինոյի գիտ. կենտրոնի նախագահ, Կենսաօրգ. քիմիայի ինստ-ի փոխտնօրեն (1991-ից): Աշխ-ները վերաբերում են պեպտիդների և սպիտակուցների կենսաօրգ. քիմիային, ցածրմոլ. կենսակարգավորիչներին, բժշկության և գյուղ-յան համար պատրաստուկների արտադր-յան ժամանակակից կենսատեխնոլոգիաներին:

ՄԻՐՈՇՆԻԿՈՎ Միխայիլ Միխայլովիչ (ծ. 1926), ռուս ֆիզիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1984): Սոց. աշխ. հերոս (1976): Աշխ-ները վերաբերում են օպտոէլեկտրոն. սարքերի տես. հիմունքների, օպտիկ. պատկերների տեղեկույթ. հատկությունների հետազոտություններին: Լենինյան մրց. (1981):

ՄԻՐՈՇՆԻՉԵՆԿՈ Իրինա Պետրովնա (ծ. 1942), ռուս. դերասանուհի: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1988): 1965-ից՝ ՄԳԱԹ-ի դերասանուհի (Աննա Պետրովնա՝ Ա. Պ. Չեխովի «Իվանով», Սերաֆինա դելլա Ռոզա՝ Թ. Ուիլյամսի «Դաջված վարդը», Էսթեր՝ Պ. Շեֆֆերի «Էկվուս», ևն): Նկարահանվել է կինոյում («Նրանց ճանաչում էին միայն դեմքով», «Քեռի Վանյա», «Մեղավոր ճանաչել», «Ուրիշի գաղտնիքները» ևն):

ՄԻՐՈՒՄՅԱՆ Կառլեն Արտավազդի (ծ. 1952), փիլ.: Փիլ. գիտ. դ-ր (1993), պրոֆ. (2002): Ռիմա *Միրումյանի* եղբայրը: Աշխ-ները վերաբերում են հայ փիլ-յան պատմության, պատմության փիլ-յան, քաղաքագիտ-յան խնդիրներին: Համահեղինակ է «Քաղաքագիտություն. հանրագիտական բառարան»-ի (2004):

ՄԻՐՈՒՄՅԱՆ Ռիմա Արտավազդի (ծ. 1957), փիլ.: Փիլ. գիտ. դ-ր (2003), պրոֆ. (2004): Կառլեն *Միրումյանի* քույրը: Աշխ-ները վերաբերում են ազգ. մտքի պատմության և մեթոդաբանության, քաղ. փիլ-յան խնդիրներին:

ՄԻՐՈՒՄՅԱՆՑ Սուրեն Հովսեփի (1915–2000), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1989), պրոֆ. (1991): Թաթարստանի գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1995): Աշխ-ները վերաբերում են մոլ. սպեկտրաչափությանը, մթն. օպտիկային, հոլոգրաֆիային և ռազմաօդ., հրթիռ., օդերևութաբան. տեխնիկայի օպտիկ. սարքավորումների ստեղծման հարցերին:

ՄԻՑԱՐ, *ξ Մեծ Արջ*, Մեծ Արջ համաստեղության կրկնակի աստղ՝ 2,4 և 4,0 *ա. մ.* բաղադրիչներով, որոնք նույնպես կրկնակի աստղեր են:

ՄԻՑԵԼԱՌԱՋԱՅՈՒՄ, ՄԱՆ-երի մոլ-նեբի ինքնաբեր խմբավորումը լուծույթներում, որի արդյունքում գոյանում են միցելներ՝ կազմված երկարաշղթա ջրամերժ (հիդրոֆոբ) ռադիկալներով տասնյակ մոլ-ներից և բևեռ. ջրամետ խմբերով ատոմներից (երկսեր մոլ-ներ): Մ. ապահովում է միցել. կատալիզը ՄԱՆ-երի լուծույթներում, նրանց լվացող հատկությունը, կիրառումը նավթաբեր շերտերից նավթի արտամղման համար և այլ տեխնոլոգ. հատկություններ:

ՄԻՑԵԼԻՈՒՄ (հուն.՝ mykes – սունկ), **սնկամարմին**, սնկերի վեգետատիվ մարմինը՝ կազմված ճյուղավորվող նրբաթելերից՝ հիֆերից: Մ-ի մասնիկներով իրականանում է սնկերի վեգետատիվ բազմացումը:

ՄԻՑԿԵՎԻՉ (Mickiewicz) Ադամ (1798–1855), լեհ բանաստեղծ, ազգ-ազատագր. շարժման գործիչ: Լեհ. ռոմանտիզմի հիմնադիրը: «Ֆիլոմատներ» և «Ֆիլարետներ» հայրենասիր. երիտասարդ. գաղտնի խմբակների ստեղծողներից: Հեղինակ է «Պոեզիա» (հ. 1–2, 1822–23) և այլ ժող-ների, «Գրաժինա» (1823), «Նախահայրեր» (մաս 2, 4, 1823, մաս 3, 1832), «Կոնրադ Վալենրոդ» (1828, հայ.՝ 1893) և այլ պոեմների, «Պան Թադեուշ» (1834) հերոսապատումի և այլ գործերի: Հայ. հրատարակվել են նաև Մ-ի «Ընտիր երկերը» (1955), «Հատընտիրը» (1999), «Պանի Տվարդովսկա» (1975) բալլադը:

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, միութենական խորհրդային սոցիալիստական հանրապետություն, ազգ-պետ. միավոր (1922–1991) ԽՍՀՄ-ում: Ունեցել է սեփ. տարածք, սահմանադրություն, պետ. իշխանության և կառավարման բարձրագույն մարմիններ, օրենսդրություն, հանրապետ. (միաժամանակ՝ միութ.) քաղաքացիություն, պետ. խորհրդանիշներ (զինանշան, դրոշ, օրհներգ) և մայրաքաղաք: Հայկ. ԽՍՀ-ն ԽՍՀՄ կազմում ընդգրկվել է նախ *Անդրկովկասյան դաշնության* միջոցով, վերջինիս լուծարումից (1936) հետո՝ ուղղակիորեն որպես Մ. հ.: Զգալիորեն սահմանափակված էին արտերկրի հետ հարաբերությունները:

«ՄԻՈՒԹՅՈՒՆ», հաս., քաղ. և ուս. կիսամսյա հանդես (1860–62, Զմյուռնիա, 1861–62-ին՝ «Միութիւն սահմանադրական»): Տեղի հաշտենից ընկ-յան հրտ-յուն: Խմբ.՝ Սարգիս Միրզա Վանանդեցի:

«ՄԻՈՒԹՅՈՒՆ», տեղեկատու պարբերաթերթ (1912–62, Կահիրե, ապա՝ Փարիզ, Նյու Յորք): ՀԲԸՄ պաշտոնաթերթ: Խմբ.՝ Վահան Մալեզյան: 1963-ին միացել է *«Յուշարար»*-ին, կոչվել *«Յուշարար-Միութիւն»*:

«ՄԻՈՒԹՅՈՒՆ», գր-գեղ., կրթ., հաս. շաբաթաթերթ (1917–19, Թիֆլիս): Ընդհանուր հայ աշակերտ. միության պաշտոնաթերթ: Խմբ-ներ՝ Գևորգ *Աբով*, Ս. Էլբակյան:

«ՄԻՈՒԹՅՈՒՆ», ազգ., հաս-քաղ., գր. շաբաթաթերթ (1945–47, Հայֆայ): Պաղեստինահայ առաջադիմ. ընկերակցության պաշտոնաթերթ:

«ՄԻՈՒԹՅՈՒՆ», ազգ., քաղ., մշակութ. ամսաթերթ (1987-ից, Սիդնեյ՝ հայ., անգլ.): ՀԲԸՄ Ավստրալիայի շրջ. վարչության պաշտոնաթերթ: Խմբ.՝ Ավետիս Յափուճյան:

«ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ» («Իթթիհատ վե թերաքքի» – «Ittihat ve terakki»), թուրք բուրժուա-հեղափոխականների քաղ. կուս-յուն: Հիմնադրվել է 1889-ին՝ «Օսմանյան միասնության ընկերություն» անվանումով: Հիմն. նպատակն *Աբդուլ Համիդ II*-ի ռեժիմի տապալումն էր: 1908-ի զինված հեղաշրջմամբ հռչակել են 1876-ի սահմանադրությունը: Գաղտնի կենտկոմի անդամները՝ *Թալեաթ*, *Էնվեր*, *Ջեմալ* և ուր., Սալոնիկից տեղափոխվել են Կ. Պոլիս: Նրանց գլխավորած ընկ-ը հռչակվել է կուս-յուն, որը 1913-ին վերցրել է ամբողջ իշխանությունը երկրում: ԱՀՊ-ի նախօրեին և ընթացքում իրագործել են

Հայոց ցեղասպանությունը: Թուրքիայի պարտությունից հետո կուս-յան վերջին համագումարը (1918-ի հոկտ.) հայտարարել է ինքնալուծարման մասին: Նոյեմբ. 2-ին *Ախպանտի* զորքերը մտել են Կ. Պոլիս և կուս-յան առաջնորդները փախել են արտերկիր: 1919–20-ին Կ. Պոլսում տեղի են ունեցել կուս-յան կենտկոմի ղեկ-ների դատավարությունները (տես *Երիտթուրքերի դատավարություն 1919–20*): Որոշ հանցագործներ հեռակա դատապարտվել են մահապատժի: Իրականում նրանց հետ հաշվեհարդար են տեսել հայ ժող. վրիժառուները (տես *Նեմեսիս*):

«ՄԻՈՒԹՅՈՒՆ Ի ՓՐԿՈՒԹՅՈՒՆ», հայ ազգ–ազատագր. խմբակ: Հիմնադրվել է 1872-ի մարտին Վանում՝ թուրք և քուրդ հարստահարիչների դեմ պայքարելու նպատակով: Գործել է 2 տարի. կարևոր դեր է խաղացել Վանում և շրջակա գյուղերում ազատագր. գաղափարներ տարածելու գործում:

«ՄԻՒՆԱՏԻՒ ԷՐՇԻԱՍ» («Արշեոսի մունետիկ»), գիտ., գր., արվ-ի պարբերաթերթ (1859–62, Կ. Պոլիս՝ հայատառ թուրք.): Խմբ.՝ Կարապետ Փանոսյան:

ՄԻՔԱՅԵԼ I ՌԱՆԳԱԲԵ, Բյուզանդիայի կայսր՝ 811–813-ին: Հաջորդել է *Նիկեփորոս* I-ին: Սիրաշահել է իր նախորդից հալածված կղերին և ավագանուն, հալածել պավլիկյաններին: Չկարողանալով լուծել ներքին և արտաքին քաղ-յան մի շարք հարցեր՝ հրաժարվել է գահից:

ՄԻՔԱՅԵԼ II ԹԼՎԱՏ ԱՄՈՐԻԱՑԻ, Բյուզանդիայի կայսր՝ 820–829-ին: Ամորիական հարստության հիմնադիրը: Սպանել է (820) *Լևոն V Հայկազնին* և տիրել գահին: Ճնշել է *Թովմա Գագիրացու* (Թովմա Սլավոն) ապստամբությունը: Պարտություն է կրել բուլղարների դեմ պատերազմում:

ՄԻՔԱՅԵԼ III, Բյուզանդիայի կայսր՝ 842-ից՝ Ամորիական հարստությունից: Բյուզանդիայի կայսր *Թեոփիլոսի* և հայազգի *Թեոդորայի* որդին: Սկզբնապես թագավորել է մոր և նրա ազգականների խնամակալությամբ: Սպանվել է հայազգի Վասիլի դավադրությամբ, որը գահ է բարձրացել որպես *Վասիլ I*:

ՄԻՔԱՅԵԼ VI Ստրատիոտիկոս (ծ. թ. անհտ–1059), Բյուզանդիայի կայսր՝ 1056–57-ին: Բարձրաստիճան զինվորականության ապստամբության հետևանքով կայսր է հռչակվել Իսահակ Կոմնենոսը, ինքը դարձել է վանական:

ՄԻՔԱՅԵԼ VIII Պալեոլոգոս (1224–1282), Բյուզանդիայի կայսր՝ 1261-ից: *Պալեոլոգոսների* հարստության հիմնադիրը: 1258-ին ընտրվել է Նիկիայի անչափահաս կայսր Հովհաննես IV Լասկարիսի (1258–1261) կայսերակից, իսկ 1259-ի սկզբից՝ կայսր: 1261-ին Մ. VIII-ի զորքերը գրավել են Կ. Պոլիսը, վերացրել խաչակիրների հիմնադրած *Լատինական կայսրությունը*: Մ. VIII հռչակվել է Բյուզանդիայի կայսր՝ վերականգնելով 1204-ից ընդհատված Բյուզ. կայսրությունը:

ՄԻՔԱՅԵԼ Ա. Ա.ՋԱՊԱՀՅԱՆ (Սսեցի, ծ. թ. անհտ–1758), Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս՝ 1737-ից: Երկու անգամ (1749 և 1751) փորձել է դառնալ ողջ թուրքահայության կաթողիկոս, բայց ապարդյուն:

ՄԻՔԱՅԵԼ Ա. ՍԵԲԱՍՏԱՑԻ (ծ. թ. անհտ–1576), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1567-ից: 1545-ից եղել է *Սրբոց Հռիփսիմեանց վանքի* առաջնորդ: 1562-ին Սեբաստիայի Սբ Նշան վանքի ժողովի անունից *Արցախի Գանձասարի* գլխավորությամբ պատվիրակություն է ուղարկել Վենետիկ՝ հայերին պարսկ. և թուրք. լծից ազատագրելու համար Հռոմի պապից օգնություն խնդրելու: Նրա հանձնարարությամբ Արցախ Թոխաթեցին մեկնել է Վենետիկ և 1565-ին հիմնադրել է տպարան:

ՄԻՔԱՅԵԼ ԱՄՈՐԻ (1126–1199), ասորի պատմագիր, եկեղեց. գործիչ: 1166-ից՝ Հակոբիկյան եկեղեցու (Ասորվոց կամ Անտիոքի) պատրիարք: Հայ. են թարգմանվել Մ. Ա.-ու «Ժամանակագրութիւն» (1870), «Ձխօստովանութիւնն հաւատոյ», «Գավազանագիրք» և այլ երկեր: Առաջինում անդրադարձել է նաև բուն Հայաստանի և Կիլիկյան Հայաստանի պատմությանը, հատկապես՝ XII դ-ի իրադարձություններին:

ՄԻՔԱՅԵԼ ՊԱՆԱՐԵՏՈՍ, XIV դ-ի 2-րդ կեսի և XV դ-ի 1-ին կեսի բյուզանդացի ժամանակագիր: Հեղինակ է «Տրապիզոնի կայսրերի՝ Մեծ Կոմնենոսների մասին...» ժամանակագրության (ընդգրկում է 1204–1426-ի ժամանակաշրջանը), որը տեղեկություններ է հաղորդում նաև Հայաստանի (մասնավորապես՝ Երզնկայի, Պարխարի լ-ների ևն) վերաբերյալ:

ՄԻՔԱՅԵԼ ՔՈՆԻԱԹ (մոտ 1138–մոտ1222), բյուզանդացի եկեղեց. գործիչ, գրող: *Նիկիտա Քոնիաթի* եղբայրը: Աթենքի մետրոպոլիտ (1182–1204): Խաչակիրների՝ Աթենքի գրավումից հետո (1205) տեղափոխվել է Կեոս (այժմ՝ Կեա), մոտ 1207-ին՝ Հովհաննես Մկրտչի վանք (1217, Թեսալիա): Մ. Ք-ի նամակներն ու ճառերը կարևոր սկզբնաղբյուրներ են Բյուզանդիայի XII դ-ի վերջ–XIII դ-ի սկզբի պատմության վերաբերյալ:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Ալեքսանդր Լևոնի (1928–1991), սրտաբան-վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (1962), պրոֆ. (1965): ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1986): 1974-ին Երևանում հիմնադրել է ԽՍՀՄ ԲԳԱ վիրաբուժության համամիութ. ԳՀԻ Երևանի մասնաճյուղը (այժմ՝ Մ-ի անվ. վիրաբուժության ինստ.): «Արյան շրջանառություն» ամսագրի կազմակերպիչ-խմբ. (1968-ից): Աշխ-ները վերաբերում են սրտի և գլխ. անոթների վերակառուցող. վիրահատությունների ժամանակ սրտամկանի ախտաբանաֆիզիոլոգ., կենսաքիմ., ձևաբանական-ռուցվածք. փոփոխություններին, սրտի արատների վիրահատ. բուժման, անոթների ախտաբանության, նաև օրգանների փոխպատվաստման խնդիրներին: Վիրաբույժների միջազգ. (1983–91) և համամիութ. ընկ-ների վարչությունների, ԽՍՀՄ ԲԳԱ վիրաբուժության, օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման գիտ. խորհրդի (1974–91) անդամ:

ԽՍՀՄ ժողղ-ների բարեկամության, «Պատվո նշան» շքանշաններ:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Անդրեյ Լևոնի (1925–2010), քվանտ. էլեկտրոնիկայի, հոլոգրաֆիայի, օպտիկ. հիշողության, նեյրոն. ցանցերի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1956), պրոֆ. (1956): ՌԳԱ ակադ. (1990, թղթ. անդամ՝ 1984-ից): Միքայել *Տեր-Միքայելյանի* եղբայրը: 1985-ից՝ ՌԳԱ օպտիկականդրոն. տեխնոլոգիաների ինստ-ի տնօրեն: Ցույց է տվել, որ անհամասեռ միջավայրում, որոշակի պայմաններում էլեկտրամագնիս. ալիքների տարածումն ուղեկցվում է նրանց բազմակի կիզակետման երևույթով (հայտնագործություն № 257, 1982, 1951-ի առաջնությամբ), ինչն օգտագործվել է «ինքնակիզակետվող» ալիքատարների ու ալեցիրների տեխնիկայում և օպտիկայում կիրառվող նույն տեսակի ոսպնյակների (Մ-ի ոսպնյակներ) ստեղծման համար: Հիմնել է արդի ռադիոէլեկտրոնիկայի նոր ուղղություն, որ կապված է ԳԲՀ տիրույթում ֆեռիտների հետազոտման և օգտագործման հետ: Կատարել է գիրոտրոպ միջավայրերի էլեկտրադինամիկային, հոլոգրաֆիային վերաբերող հիմնարար հետազոտություններ, մշակել է ֆեռիտներում ոչ գծային երևույթների տեսությունը, ռեկորդ. բնութագրերով հիշողության ծավալով և խանգարումակայունությամբ նոր դասի նեյրոն. համակարգեր (հարաչափ. նեյրոցանցեր):

Լենինյան (1961), ՀԽՍՀ (1981), ՌԴ (1995) Պետ., Միջազգ. օպտիկ. միության (1992), ՌԳԱ Ա. Ա. Պոպովի անվ. ոսկե (2005), ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 4-րդ աստիճանի (1999) մեդալներ:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Արա Ռազմիկի (ծ. 1965), ճարտ., նկարիչ: 1993-ից՝ Իսպանիայում: Հեղինակ է գեղանկարչ. («Կրոնական կրթություն», «Ճամփորդություն նահանջ տարում», «Սիրտ նվաճելու երկու ճանապարհ», «Երկու ճակատագրի ընտրություն» ևն), նաև գրաֆիկ. գործերի: Միջազգ. մրցույթների 1-ին մրց-ներ (1996–97, Մալգրատ դե Մար, 1998, Բարսելոն), արծաթե մեդալ (2000, Բարսելոն):

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Արեգ Մարտինի (ծ. 1962), աստղաֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. թեկնածու (1994): Բյուրականի աստղադիտարանի տնօրեն (2017-ից): Ուսումնասիրությունները վերաբերում են Սպիտակ թզուկ և պայթյուն. փոփոխ. աստղերին, ակտիվ գալակտիկաների որոնումներին: Հայկ. աստղագիտ. ընկ-յան հիմնադիր-նախագահ (2001-ից, համանախագահ՝ 2002-ից), Հայկ. վիրտուալ աստղադիտարանի հիմնադիր-ղեկ. (2005-ից): Վ. Համբարձումյանի անվ. միջազգ. մրց-ի հանձնաժողովի գիտ. քարտուղար (2009-ից): Միջազգ., Եվրոպ., Եվրասիական աստղագիտ. ընկ-ների, Վիրտուալ աստղադիտարանների միջազգ. միության անդամ:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Գաբրիել Գաբրիելի (1885–1935), արևելագետ, բանասեր, պատմաբան: Եվրոպ. մայրաքաղաքներում հիմնադրել է օգնության կոմիտեներ, աջակցել *Պողոս Նուբարի* դիվանագիտ. գործունեությանը: Զբաղվել է նախախեթ., խեթ. արձանագրությունների վերծանմամբ: Հեղինակ է արաբ-ի պատմությանը վերաբերող աշխ-յան, սահմանել է չերքեզերենի քերական. և ուղղագր. կանոններ, զբաղվել Հայոց պատմության հարցերով: Եղել է ՀՕԿ-ի Հալեպի բաժանմունքի նախագահ:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Գեղեոն Հայրապետի (1907–1985), գնդ. (1948): ԽՄ հերոս (1943): Հերոսի կոչման արժանացել է ՀՄՊ-ում Դնեպրի գետանցման ժամանակ ցուցաբերած խիզախության համար: Հեղինակ է «Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները» (1980) աշխ-յան:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Գեղազնիկ Արմենակի, *Չաուշ* (1951–1990), երկրապահ-ազատամարտիկ: Հայաստանի Ազգ. հերոս (1996, հետմահու): Մասնակցել է Հայաստանի սահմանների պաշտպ. կռիվներին: Եղել է Աշտարակի երկրապահ ջոկատի հրամ.: Զոհվել է, երբ Վիտյա *Այվազյանի* հետ գնացել էր «Հայաստանի ազգային բա-

նակի» շտաբ՝ զինական միաանության բանակցություններ վարելու:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Գրիգոր Գաբրիելի (1893–1953), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1948), պրոֆ. (1949): Աշխ–ները վերաբերում են Կիլիկիայի հայկ. պետության կազմավորման ու անկման սոցիալ–քաղ. պատճառներին, միջազգ. կապերին, մշակույթ. փոխհարաբերություններին:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Երվանդ Սուքիասի (ծ. 1937), սրտաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1992): Աշխ–ները վերաբերում են սրտամկանի ինֆարկտին, իշեմիկ հիվանդությանը, զարկերակ. գերճնշմանը: Սրտաբանների եվրոպ. ընկերակցության (1995–ից), Նյու Յորքի ԳԱ (1996), Էկոլոգիայի և կենսագործունեության անվտանգության միջազգ. ակադ–ի (2003) անդամ:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Էլեոնորա Միքայելի (ծ. 1938), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դ–ր (1989), պրոֆ. (1991): Աշխ–ները վերաբերում են հիվանդությունների ժամանակ օքսիդացման, գերհույզի ախտածին ազդեցության կանխման և հակաօքսիդիչների միջոցով բուժման հարցերին: ԵՊԲՀ ոսկե մեդալ (2000):

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Լյուդվիգ Արսենի (1905–1987), դրամատուրգ, արձակագիր: Հեղինակ է «Պատմական ողբերգություններ» (1963) պիեսների, «Սիրո ճանապարհ» (1968) պատմվածքների ժող–ների, «Զարինե» (1958), «Վարդենիք» (1974) վեպերի:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Լև Ալեքսանդրի (1929–2013), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1965), պրոֆ. (1970): Աշխ–ները վերաբերում են թույլ փոխազդեցություններին, ատոմների միջուկների ճեղքմանը: Սկզբնավորել է միջուկ. ռեակտորներում նյութի հետ մասնիկների փոխազդեցության օրենքների փորձարար. հետազոտությունների զարգացումը և ուսումնասիրել տրոհման շղթ. ռեակցիան հեռահսկելու նպատակով ռեակտորի նեյտրոն. ճառագայթումն օգտագործելու հարցերը:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Կարեն (Գերասիմ) Սարգսի (1883–1941), գրող, թարգմանիչ: Մասնակցել է Վ. Յ. *Բրյուսովի* նախաձեռնած «Հայ պոեզիան...» անթոլոգիայի թարգմանության աշխ–ներին: Հեղինակ է «Զրկանքի յոգներ» (1907), «Զմրան երեկոյ» (1912), ««Majestic»: Ամերիկյան կարճ պատմվածքներ» (1928), «Գույների կռիվը» (1929), «Կեցցե՛ն հաղթվածները» (1961) պատմվածքների և արձակ այլ գործերի ժող–ների: Թարգմանել է O. Ուայլդի, Ջ. Սվիֆթի գործերից: Անհատի պաշտամունքի զոհ:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Մամիկոն Սողոմոնի (1920–2002), դերասան: Ադրբ. ԽՍՀ ժող. արտիստ (1983): 1945–49–ին՝ Բաքվի հայկ., 1949–ից՝ Ստեփանակերտի դրամատիկ. թատրոնների դերասան (Սուրեն՝ Շիրվանզադեի «Պատվի համար», Մարգար՝ Ա. Պապայանի «Աշխարհին, այո՛, շուռ է եկել», Կակուլի՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», Դերասան՝ Մ. Գորկու «Հատակում», ևն):

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Մարտին Գրիգորի (1926–1997), ճարտ.: ՀՀ վաստ. ճարտ. (1968): ՀՃԱ թղթ. անդամ (1995): Նախագծերով կառուցվել են՝ Երևանում՝ Հայճարտշին ԳՀԻ համալիրը (1957–64), 1915–ին Խարբերդում զոհված հայերի հիշատակին նվիրված հուշարձանը՝ Նոր Խարբերդում (1965), մշակութ., մարզ. և հանգստի կենտրոն՝ Ձերմուկում (1972), մշակել է Հայաստանի ցամաք. կլիմայի համար բնակարանի «մուտք–պատշգամբ» տիպը (1976, ԽՍՀՄ ԺՏՆՑ արծաթե մեդալ): 1962–67–ի խորհրդ. ճարտ–յան նվաճումների համամիութ. ստուգատեսի դափնեկիր:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Միքայել Հովհաննեսի (1879–1943), քանդ.: Հեղինակ է դիմանկարների (Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Րաֆֆու, Ծերենցի և ուր.), ժանր. հորինվածքների («Բեռնակիրը», 1903, «Կուժը կոտրած աղջիկը», 1906, «Ասեղ թելող պառավը», 1906) ևն: Թիֆլիսի հայ արվեստագետների միության հիմնադիրներից (1916):

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Միքայել Վարազդատի (ծ. 1952), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (2006): Աշխ–ները վերաբերում են հումքի ռացիոնալ օգտագործման, տնտ. մրցակցության և մենաշնորհների պետ. կարգավորման խնդիրներին:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Նանսեն Հարությունի (1931–1999), բանաստեղծ: Հեղինակ է «Իմ գարունը» (1958), «Քարե քնքշանք» (1971), «Մանուշակի փունջը» (1985), «Արթուն մոլորակ» (1990) և այլ բանաստեղծությունների, «Կարոտի աշխարհ» (1975) ֆելիետոնների ժող–ների, նաև մանկ. երկերի:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Նիկոլայ Գեղամի (1927–1991), կենսաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1969), պրոֆ. (1972): Աշխ–ները վերաբերում են գլխուղեղի մեծ կիսագնդերի հիպոթալամո–հիպոֆիզ. էվոլյուցիոն փոխհարաբերությունների պարզաբանմանը, երեխաների մտավոր ու ֆիզ. զարգացման առանձնահատկություններին:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Պարույր Ավագի (1924–մ. թ. անհտ), բանաստեղծ, թարգմանիչ: 1971–75–ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար: 1977–ից՝ արտերկրում: Հեղինակ է «Արջուկ» (1956), «Բալլաղներ» (1962), «Զարմանալի ծիլը» (1962), «Հետքեր սրտի վրա» (1963), «Սիրո լեգենդը» (1975) բանաստեղծությունների և բալլադների ժող–ների: Կատարել է թարգմ–յուններ ռուս–ից, գերմ–ից:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Սերգեյ Գերասիմի (1923–2016), կինոռեժ.: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1976): ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1983): 1954–56–ին՝ Տաշքենդի ռուս. թատրոնի գլխ. ռեժ., 1956–ից՝ Լենֆիլմի ռեժ., 1989–ից՝ Պետրոպոլ ստուդիայի գեղ. ղեկ.: Ֆ. Նանսենին նվիրված «Ընդամենը մեկ կյանք» (1968) կինոնկարում անդրադարձել է նաև հայ գաղթականներին: Ճանաչված են «Պարգևատրում» (1975), «Այրիներ» (1977), «Ինքնակամ սիրահարվածը» (1982, սցենարի համահեղ.՝ Մ.), «Պահանջկոտ փեսացու» (1993), «Ֆրանսիական վալս» (1995), «Իմ թանկագին աստղիկ» (2000), «Ձմռան քամի» (2006) և այլ ֆիլմեր:

Համամիութ. կփ գլխ. (1975, 1983), ԽՍՀՄ Պետ. (1976) մրց–ներ:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ (Թերլեմեզյան) Վահե Միքայելի (1900–1967), թարգմանիչ: Թարգմանել է ֆրանս–ից (Գ. Ֆլոբեր, «Տիկին Բովարի», 1937, Վ. Հյուգո, «Թշվառներ», հ. 1–5, 1940–51, ևն), ռուս–ից (Ա. Պ. Չեխով, «Ընտիր երկեր», 1948, Մ. Գորկի, «Երկերի ժողովածու», հ. 6–7, 1951, ևն), նաև համաշխ. գրկ–յան ուր. գործեր:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Վարդգես Ալեքսանի (1924–2005), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1966), պրոֆ. (1978): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996): ՀԽՍՀ ԳԱ *«Լրաբեր հասարակական գիտությունների»* ամսագրի (1972–1999), *«Պատմաբանասիրական հանդեսի»* (1999–2005) գլխ. խմբ.: Աշխ–ները վերաբերում են Ղրիմի հայկ. գաղութի պատմությանը, հայ–ռուս. հարաբերություններին: Կազմել է «Լեռնային Ղարաբաղը 1918–1923–ին» (ռուս., 1992), «Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում (1913–1919): Կայզերական Գերմանիայի արտգործնախարարության քաղարխիվի նյութերը» (առաջաբ., ծնթգր.՝ Մ–ի, ռուս., 1995, գերմ.՝ 2004), «Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915–1918 թթ.)» (2004) փաստաթղթերի ժող–ները:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Վերգինե Գևորգի (1904–1990), մանրէաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1950), պրոֆ. (1952): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): 1938–43–ին՝ ԵՊԲՀ ռեկտոր: Աշխ–ները վերաբերում են ՀՀ–ում աղիք. և մանկ. վարակիչ հիվանդությունների համաճարակաբանության, կանխարգելիչ միջոցառումների մշակման, իմունիտետի վրա հակաբիոտիկների ազդեցության և իմունածնության մեջ ենթատեսաթմբի դերի բացահայտման խնդիրներին: ՀԲ նախագահ:

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի, «Պատվո նշան» (2) շքանշաններ:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Քրիստափոր Մկրտչի (1859–1905), հաս–քաղ. գործիչ, ՀՅԴ կուսյան հիմնադիր–առաջնորդ ու տեսաբան: 1889–ից աջակցել է *«Երիտասարդ Հայաստան»* կազմ–յանը: 1900–ին Փարիզում նախաձեռնել է *«Պրո Արմենիա»* (ֆրանս.) թերթի հրատարակումը: Մ–ի գաղափարներն արտահայտված են նրա «Յեղափոխականի մտքերը» ժող–ում (1906):

ՄԻՔԵԼԱՆՋԵԼՈ (Michelangelo) Բուոնարոտի (1475–1564), իտալացի քանդ., գեղանկարիչ, ճարտ., բանաստեղծ: Ստեղծագործություններում արտացոլել է մարդու՝ պաթոսով առլեցուն Բարձր Վերածննդի իդեալները, Ուշ Վերածննդի շրջանում աշխարհընկալման հումանիստ. ճգնաժամի ողբերգ. զգացողությունը: Մոնումենտալությունը, կերպարների պլաստիկությունը և դրամատիզմը, ակնածանքը մարդու գեղեցկության հանդեպ արտահայտվել են վաղ շրջանի գործերում («Ողբ առ Քրիստոս», 1497–1501, «Դավիթ», 1501–04, «Կաշինի ճակատամարտը», 1504–07): Վատիկանի Սիքստինյան կապելլայի որմնանկարները (1508–12), «Մովսես»–ի արձանը (մոտ 1513–15) հաստատում են մարդու ֆիզ. և հոգևոր գեղեցկությունը, նրա ստեղծագործ. անսահման հնարավորությունները: Ողբերգ. նոտաները, Վերածննդի իդեալների ճգնաժամը մարմնավորել է Ֆլորենցիայի Սան Լորենցո եկեղեցու Նոր ավանդատան համալիրում (1520–34), Սիքստինյան կապելլայի խորանի «Ահեղ դատաստան» (1536–41) որմնանկարում, «Ողբ առ Քրիստոս» (մոտ 1550–55) ուշ տարբերակներում ևն: Մ–ի ճարտ–յան մեջ գերիշխող պլաստիկ. արտահայտչականությունը, զանգվածների դինամիկ հակադրությունը կանխորոշել են մաներիստ. կառույցների ձևավորումը (Ֆլորենցիայի Լաուրենցիանա գրադարանը, 1523–34): 1546–ից ղեկավարել է Հռոմի Սբ Պետրոսի տաճարի, Կապիտոլիումի համալիրի կառուցումը:

ՄԻՔՈՐԱԿՏԵՐԻԱՆԵՐ (< հուն. myxa – լորձ և *բակտերիաներ*), պտղամարմին առաջացնող գրամ–բացաս. ցուպիկաձև բակտերիաների կարգ: Արտադրում են լորձ, որը նպաստում է նրանց հակազդող շարժմանը: Ապրում են հողում, գոմաղբում, բուս. մնացորդների վրա, նպաստում դրանց քայքայմանը:

ՄԻՔՍՈՄԱՏՈՋ ճագարների, սուր վիրուս. հիվանդություն: Ախտանշանները՝ գլխի առաջային մասի, աչքերի, արտաքին սեռ. օրգանների ուռածություն: Բնորոշ է բարձր անկումը: Վիրուսի հիմն. փոխանցողը խայթող միջատներն են: Հիվանդ կենդանիներին սպանում են:

ՄԻՔՍՈՊՈՐԻԴԻԱՆԵՐ, լորձային սպորավորներ, նախակենդանիների դաս, կնիդոսպորիդիաներ: Չափերը՝ մինչև մի քանի *մմ*: Հայտնի է ավելի քան 1000 տեսակ: Ձկների, հազվադեպ՝ երկկենցաղների և սողունների մակաբույծներ են: Վնաս են հասցնում ծով. ձկնաբուծությանը:

ՄԻՔՍՈՏՐՈՖՆԵՐ (< հուն. mixis – խառնում և trophe – սնունդ, սնում), խառը (անօրգ. և օրգ.) նյութերով սնվող միկրոօրգանիզմներ: Մ. են քլորոֆիլակիր մտրակակիրները, որոնք ընդունակ են խիստ աղտոտված ջրամբարներում սնվելու, նաև կիսամակաբույծ և միջատակեր բույսերը նև:

ՄԼԱԿԱՅԻՆ ՏԵՆԴ, պապատաչի տենդ, սուր վիրուս. արևադարձ. հիվանդություն: Փոխանցողները *մլակներն* են:

ՄԼԱԿՆԵՐ (Phlebotomidae), երկթևանիների կարգի միջատների ընտանիք: Երկ. 1,3–3,5 *մմ* է՝ պատված մոխրագույն կամ դեղնավուն մազիկներով: Հայտնի է ավելի քան 130 տեսակ՝ առավելապես արևադարձներում և մինչև 40°-ական լայն-ները: ՀՀ-ում տարածված է 7 տեսակ: Մթնշաղ. միջատներ են: Արուները սնվում են բուս. հյութերով, էգերը՝ կաթնասունների, սողունների, մարդու արյունով: Մլակային տենդի և լեյշմանիոզների փոխանցողներ են:

ՄԼԵՀ (ծ. թ. անհտ–973/974), հայազգի բյուզանդացի ռազմ. գործիչ: Եղել է սխոլների դոմեստիկոս (սպարապետ), գլխավորել բյուզ. զորքը՝ արաբների դեմ կռվում: Գրավել է (973) Մելիտինեն, հարձակվել է Ամիդի վրա, բայց զերվել և տարվել է Բաղդադ, ենթարկվել մահապատժի:

ՄԼԵՀ (1120–ից առաջ–1175), Կիլիկիայի հայկ. պետության Մեծ իշխան՝ 1169–ից: *Լևոն Ա* Ռուբինյանի որդին: Հաջորդել է եղբորը՝ *Թորոս Բ*–ին: 1171–72–ին, երկրից վտարելով խաչակիր ասպետներին ու ֆրանկ հոգևորականներին, բռնագրավել է նրանց կալվածքները: 1173–ին Հալեպի ամիրա Նուր ադ–Դինի զին. օգնությամբ ջախջախել է բյուզ. զորքը, ազատագրել Դաշտ. Կիլիկիան, պետության նոր մայրաքաղաք հռչակել վերակառուցված *Միսը*: Դարձել է պալատ. դավադրության զոհ:

ՄԼԿԱՆԱԽՈՏ (Climicifuga), գորտնուկազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է ավելի քան 18 տեսակ՝ Հս. կիսագնդի բարեխառն գոտում: Որոշ տեսակներ փայտոջիլներին վնասող տհաճ հոտ ունեն (այստեղից՝ անվանումը): Դաուրյան Մ–ի կոճղարմատների թուրմը հանգստացնող և արյան ճնշումն իջեցնող միջոց է:

«ՄԼՔԵ ԹԱԳՈՒՀՈՒ ԱՎԵՏԱՐԱՆ», IX դ–ի ձեռագիր մատյան (862, Վնտ. մտնդ., ձեռ. № 1144/86): Հավանաբար ստեղծվել է Անիում: Ամբողջ. պահպանված և ճշգրիտ թվագրված հայկ. հնագույն նկարազարդ ձեռագիրն է: Ունի 6 խորան, 1 տերուն. պատկեր («Համբարձում») և 4 ավետարանիչի դիմանկարներ: Մատյանի 3–րդ ստացողը Վասպուրականի Գագիկ Արծրունի թագավորի 2–րդ կինը՝ Սլքե թագուհին է (այստեղից էլ՝ անվանումը), որն Ավետարանը պահ է տվել Վարագավանքի Սբ Աստվածածին եկեղեցուն: Հետագայում քանիցս առևանգվել է և փրկագնվել: 1830–ին ձեռագիրը Վնտ ՄՄ–ին է նվիրաբերել ախալցխացի տեր Գրիգոր Ներսիսյանցը:

ՄԼՔԵՅԱՆ Ռոբերտ Գրիշայի (ծ. 1961), խմբավար: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2008): «Հայ ֆոլկ» վոկալ խմբի հիմնադիրը (1995), 1992–2000–ին՝ Գյումրիի սիմֆ. նվագախմբի և կամեր. երգչախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր, 2000–ից՝ Հայաստանի պետ. կամեր. նվագախմբի երգչախմբի գլխ. դիրիժոր:

«Սայաթ–Նովա» համահայկ. երգի փառատոնի 1–ին մրց. (2000, Երևան), ՀՀ «Մովսես Խորենացի» (1996), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2–րդ աստիճանի (2016) մեդալներ:

ՄԽԵՅԱՆ Էմիլ Երեմի (1930–1981), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դ–ր (1965), պրոֆ. (1966): Զարգացրել է գլխուղեղի գործունեության մեջ սիմպաթիկ նյարդ. համակարգի հարմարող. և սնուցող. դերի վերաբերյալ Լևոն *Օրբելու* տեսակետը: Հետազոտել է գլիկոլիպիդների ազդեցությունը ԿՆՀ–ի ֆունկցիայի վրա, նաև ինքնաբեր գերճնշման զարգացման ժամանակ:

ՄԽԻԹԱՐ, XIII դ–ի բանաստեղծ: Ենթադրվում է, որ «Պղնձե քաղաքի պատմության» թարգմանիչ Առաքել արեւոա Անեցու կամ Շիրակվանեցու գործընկեր Մխիթար Չեչկանցն է: Մ–ի անունով ավանդված կաֆաները (5) հայ. թարգմանված կաֆաներից հնագույնն են. հանդիպում են Մտնդ–ի «Պղնձե քաղաքի պատմության» № 6185 ձեռագրում (XVII դ.):

ՄԽԻԹԱՐ, XIII դ–ի կեսերի ճարտ.: Ստեղծագործել է Վայոց ձորում՝ Պռոշյան իշխանների տիրույթում: *Շնորհավոր Աղբարի* հետ Գոմուր գ–ի (այժմ՝ գ. Գոմք, ՀՀ Վայոց ձորի մարզում) մոտակայքում 1263–ին կառուցել է խաչքար–մատուռ: Կարծիք կա, որ գյուղամիջի ժամատունն ու եկեղեցին (մնացել են հետքերը) նույնպես կառուցել են Մ. և Շնորհավոր Աղբարը:

ՄԽԻԹԱՐ Ա ԳՈՆԵՐՑԻ, Տեր Մխիկ (ծ. թ. անհտ–1355), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1341–ից: Նրա օրոք Սսում գումարված (1345) եկեղեց. ժողովը, Եվրոպայից օգնություն ստանալու ակնկալիքով, ձևականորեն ընդունել է կաթոլիկ եկեղեցու հետ միանալու Հռոմի պապի առաջարկը, սակայն չի իրագործվել: Գահակալության գրեթե ողջ ընթացքում զբաղվել է *Ներսես Պալիանենցի* և ուր.՝ Ավինյոնի պապ. արքունիք ներկայացրած՝ հայ եկեղեցուն վերագրված «117 մոլորություններին» պատասխան–հերքումներ տալով:

ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑԻ (1230/35–1297/1300), պատմիչ, մանկավարժ, վարքագիր, բանաստեղծ, եկեղեց. գործիչ, երգահան: Մինչև 1289–ը, որպես արք., վարել է Պռոշյաններին ենթակա հոգևոր կենտրոնների եկեղեց. գործերը: 1297–ից գլխավորել է *Այրիվանքի դպրոցը*: Հիմն. գործերից են «Նոր պատմութիւն» (1289, հրտ.՝ «Պատմութիւն Հայոց», 1860) ժամանակագր. բնույթի երկը (հրտ.՝ նաև ռուս. և ֆրանս.), «Գանձարանը» (1268, հոգևոր անհատ. երգերի չափածո ժող.), Ալեքսիանոս Կրոնավորի և Ստեփանոս Սյունեցու վարքերը նև: Հորինել է իր գրած գանձերի, տաղերի, օրհնության երգերի և շարականի երաժշտությունը:

ՄԽԻԹԱՐ ԱՆԵՑԻ, Երեց, XII դ–ի 2–րդ կեսի պատմիչ: Հեղինակ է Հայոց պատմության՝ Պարույրի գահակալությունից (մ. թ. ա. VII դ.) մինչև *Խաչակրաց արշավանքները*: Երկի 3 մասից մեզ է հասել միայն 1–ին մասի մի հատված (հայտնաբերել և հրատարակել է Քերովբե *Պատկանյանը*): Մ. Ա–ուց պահպանվել է նաև Սուհամմեդ մարգարեի մասին մի զրույց:

ՄԽԻԹԱՐ ԱՆԵՑԻ, XIII դ–ի վերջ–XIV դ–ի կեսի գրիչ, մանրանկարիչ: 1338–ի Աստվածաշնչի (Մտնդ., ձեռ. № 4429) և 1356–ի Ավետարանի (Երուսաղեմի մտնդ., ձեռ. № 1941) զարդանկարների հեղինակը, տերուն. պատկերներինը *Ավագն* է: Պատկերազարդել է նաև Հռոմոսի վանքում ընդօրինակած՝ Սամվել Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» (XIII դ., ձեռ. № 3613) ձեռագիրը, Սուլթանիայում ընդօրինակած 1321–ի ժող–ը (ձեռ. № 2961), 1356–57–ի Ավետարանը (ձեռ. № 7740, բոլորը՝ Մտնդ.):

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ (1120–ական թթ.–1213), օրենսդիր, առակագիր, մանկավարժ, հաս. գործիչ: Աշակերտել է *Հովհաննես Սարկավագունի*, ստացել վրդ–ի կոչում: Մեկնել է Կիլիկիա. աշակերտել է Սև լ–ան երևելի գիտնականներին: Վերադարձել և գործել է Գետիկի վանքում, որի՝ երկրաշարժից ավերվելուց հետո, *Զաքարյանների* հովանավորությամբ, Գետիկից ոչ հեռու կառուցել է Նոր Գետիկի վանքը և հանգրվանել այնտեղ: Եղել է նաև Զաքարե Երկայնաբազուկի խոստովանահայրն ու խորհրդատուն: Հեղինակ է մատենագրության զանազան ճյուղերին վերաբերող մոտ մեկ տասնյակ աշխ–ների՝ «Համառօտ մեկնութիւն մարգարէութեանն Երեմիայի», «Ողբք ի վերայ բնութեանս՝ ի դիմաց Ադամայ առ որդիս նորա», «Յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց՝ ի խնդրոյ մեծ զօրավարին Զաքարէի եւ եղբօր իւրոյ» («Արարատ» ամսագիր, 1900–01), «Թուղթ խրատականք» «Շարք հայրապետացն Աղուանից», աղոթքների, «Վկայութիւն սրբոյն Խոսրովայ», նաև առակների, որոնք առաջին արձակ ստեղծագործություններն են հայ գրկ–յան մեջ, «Գիրք Դատաստանի»–ի (*Մխիթար Գոշի Դատաստանագիրք*): Մ. Գ–ի արձանը կանգնեցված է Մտնդ–ի առջև, սահմանվել է ՀՀ «Մխիթար Գոշ» մեդալ:

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ, **«Գիրք Դատաստանի»**, հայ իրավունքի հուշարձան: Կազմել է *Մխիթար Գոշը* 1184–ին (հրտ.՝ 1880): Բաղկացած է նախադրությունից (10 գլուխ) և 151 հոդվածից: Ընդգրկում է իրավունքի բոլոր ճյուղերն ու ինստ–ները, հաս. հարաբերությունների քր., քաղաքաց., ամուսնա–ընտանեկան, դատ. և պետ. իրավունքների բնագավառները: Կիրառվել է բուն Հայաստանում և հայկ. գաղթավայրերում՝ Լեհաստանում, Աստրախանում, Վրաստանում, Սուդանում նև: Թարգմանվել է լատ., լեհ., ղփչաղ., վրաց., ռուս.: Արժեքավոր տեղեկություններ է պարունակում նաև հայ ժողդ–ի կյանքի ու կենցաղի մասին: Դատաստանագրքի շուրջ 40 ձեռագիր, այդ թվում՝ հնագույնը (ձեռ. № 488), պահվում է Մտնդ–ում:

ՄԽԻԹԱՐ ԿԱՋՄԻՉ, XII դ–ի քարգործ վարպետ: Գործերից առավել հայտնի է Գրիգոր Տուտեորդու հուշարձան–խաչքարը (Սանահինի վանքի Սբ Հարություն եկեղեցու հս. պատի տակ, 1184), որը տեղադրված է «սելջուկյան շղթայով» երիզված սեղանաքարին դրված պատվանդանին:

ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻ (մոտ 1120–1200), բժիշկ, բնագետ, փիլ.: Հայ դաս. բժշկության և կիլիկյան բժշկ. դպրոցի հիմնադիրը: Գործն. բժշկության հետ միաժամանակ զբաղվել է մարդակազմության, ախտաբանության, ակնաբուժության, դեղագիտ–յան ու բնագիտ–յան հարցերով: Դեղագիտ–յան ու դեղագործության բնագավառների փորձն ի մի բերելով՝ շարադրել է «Ախրապատինը» (մեզ չի հասել): «Ձերմանց մխիթարութիւն» (հրտ.՝ 1832) աշխ–յան մեջ անդրադարձել է Դաշտ. Կիլիկիայի ճահճոտ վայրերում տարածված տենդային հիվանդությունների դասակարգման, պատճառագիտ–յան, ախտածնության կանխարգելման և բուժման հարցերին: Մ. Հ. առաջ է քաշել նաև պատճառագիտ. ուսմունք, մշակել է վարակիչ և ալերգ. հիվանդությունների համակցված բուժման ուրույն համակարգ, որն ընդգրկում է դեղորայք., սննդ. և ֆիզ. եղանակները: Մ. Հ–ու բուժման համակարգում կարևոր տեղ ունեն նաև հոգեկանխարգելման և հոգեբուժման տարրերը, բժշկի ազդու խոսքը, երաժշտությունը ևն, մեծ ավանդ ունի նաև հայ բժշկ. տերմինների ստեղծման գործում: Համաշխ. բժշկագիտ–յան և բնագիտ–յան պատմության մեջ նրա բժշկապետի դերը բարձր է գնահատել երկի գերմանացի թարգմանիչ Է. Զյդելը: Մ. Հ–ու անունով են կոչվել ԵՊԲՀ–ն, 1993–ին սահմանվել է ՀՀ «Մխիթար Հերացի» մեդալ:

ՄԽԻԹԱՐ ՀՅՈՒՄՆ, XII–XIII դդ–ի ճարտ., հյուսն: 1188–1208–ին կառուցել է (*Հովհաննեսի* հետ) *Գոշավանքի* ճարտ. համալիրի մեծ մասը, 1191–96–ին՝ գլխ. Սբ Աստվածածին եկեղեցին, XII դ–ի վերջ–XIII դ–ի սկզբին՝ Սբ Առաքելոց և Սբ Հռիփսիմե մատուռները, ըստ Կիրակոս Գանձակեցու՝ նաև այլ եկեղեցիներ (չեն պահպանվել):

ՄԽԻԹԱՐ ՍԱՄՆԵՑԻ, Կերմանեցի (1260–ական թթ.–1337), մատենագիր, մանկավարժ: 1282–85–ին *Գլաձորի համալսարանում* աշակերտել է Ներսես Մշեցուն և Եսայի Նչեցուն, ստացել վրդ–ի աստիճան: Ավարտելուց հետո մինչև 1337–ը ղեկավարել է *Մեծոփավանքի դպրոցը*, ծավալել գրչ., քարոզչ. աշխ., պայքարել ունիթորության դեմ: Մ. Ս–ուց մեզ է հասել 10 ձեռագիր (4–ը՝ Երևանի՝ ձեռ. № 193, 952, 1180, 3606, 2–ը՝ Երուսաղեմի մմտդ–ներում), այդ թվում՝ «Մեկնութիւն թղթոց եւ հանգստեան Յովհաննու»–ն, «Խօսք ընդդեմ տօմարին Լևոնի» երկը, նաև բազմաթիվ ճառեր:

ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ (ավազանի անունը՝ Մանուկ, 1676–1749), գիտամշակութ. և եկեղեց. գործիչ, *Մխիթարյան միաբանության* հիմնադիրը: Վրդ. (1699): 1701–ին Կ. Պոլսում հիմնադրել է միաբանություն, 1715–ին տեղափոխել է Վենետիկ, 1717–ին վերջնականապես հաստատվել Սբ Ղազար կղզում, որտեղ կառուցել է եկեղեցի, բացել դպրոց, հիմնադրել մմտդ., զբաղվել գիտամատենագիտ. աշխ–ով, ղեկավարել իր սաների հետազոտությունները, կատարել թարգմանություններ, հրատարակել գրքեր: Հեղինակ է «Բառգիրք հայկազեան լեզուի» (հ. 1, 2, 1749, 1769) կոթող. աշխ–յան (ներառում է ավելի քան 100 հզ. բառահոդված), «Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց» (1727, արևմտահայ աշխարհաբարի առաջին քերակ–ը), «Քերականութիւն գրաբառի լեզուի հայկազեան սեռի» (1730), նաև կրոնաաստվածաբան., կանոն., մեկնող. երկերի, «Տաղարան»–ի (1727):

ՄԽԻԹԱՐ ՍՊԱՐԱՊԵՏ, Մխիթար Բեկ (XVII դ–ի վերջ–մոտ 1729/30), 1720–ական թթ–ի ազատագր. շարժման ղեկ–ներից: Մասնակցել է *Դավիթ Բեկի* գլխավորած կռիվներին. նրա վախճանից (1728) հետո ինքն է ղեկավարել պայքարը: Հարձակվող թուրք. ուժերի դեմ կազմակերպել է Հալիձորի պաշտպ–յունն ու հակագրոհը (տես *Հալիձորի ճակատամարտ 1727*), ապա փայլուն հաղթանակ տարել Մեղրու մոտ: Սակայն թուրք. մեծաքանակ զորքերի ընդհանուր հարձակման ժամանակ Մ. Ս–ի ուժերը մատնվել են անհաջողության: Սպանվել է հայրենակիցների ձեռքով Խնձորեսկում, որտեղ և թաղված է:

ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ, XIII դ–ի ճարտ.: 1277–ին Անիի մեծահարուստ Սահմադինի պատվերով վերակառուցել է *Մրենի Կաթողիկե եկեղեցու* մոտակայքի Սբ Փրկիչ մատուռը (այժմ՝ ավերված):

ՄԽԻԹԱՐ ՏԱՇՐԱՑԻ, Սկևռացի (1200–1271), աստվածաբան, վրդ.: Ըստ *Կիրակոս Գանձակեցու*՝ ընդգրկված է եղել Կիլիկիայի հայկ. թագավորությունից Ոսկե Հորդայի խաների մոտ ուղարկված դեսպանագնացների կազմում: Հեղինակ է «Յաղագս համապատութեան երկոտասանից առաքելոց» (հրտ.՝ 1857, ֆրանս.՝ 1869) աշխ–յան, որը գրել է *Հեթում Ա*–ի հրամանով և հեղինակի հաշվետվությունն է՝ որպես նվիրակ 1263–ին Աքքա կատարած դիվանագիտ. այցի մասին: Հայտնի է բազմաթիվ ընդօրինակություններով, ինագույնը Փարիզի ազգ. գրադարանի հայկ. ձեռագրերի պահոցում է (№ 42):

«ՄԽԻԹԱՐԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ», բարոյական, գիտակրթ., դպրոց. ամսագիր (1947–1968, Վենետիկ): ՄՄ հրտ–յուն: 1969–85–ին՝ *«Հայ ընտանիք»*:

ՄԽԻԹԱՐՅԱՆ Աբել (1804–1873), հայագետ–պատմաբան, արք., Տրապիզոնի հայոց հոգևոր առաջնորդ: Հիմնադրել է «Թանգարան Հայկազյան» ընկ–ը, եղել Սբ Էջմիածնի «*Արարատ*» ամսագրի 1–ին խմբ–ը: Հեղինակ է «Ճանապարհորդութիւն յԱնի» (1855), «Պատմութիւն մենաստանին Հառիճոյ ի Շիրակ» (1856), «Վէպ գաղթականութեան հայոց Տրապիզոնու» (1857) և այլ երկերի:

ՄԽԻԹԱՐՅԱՆ Ալեքսանդր Նիկոլայի (1912–1978), ավիացիայի գեն–մայոր (1958): ՀՄՊ–ում եղել է ռմրակոծիչ ավիագնդի հրամ–ի տեղակալ, 1944–ից՝ ավիագնդի, 1951–60–ին՝ ավիազորամասի հրամ., 1960–63–ին պաշտոնավարել է ԽՍՀՄ ՊՆ կենտր. ապարատում:

ԽՍՀՄ Կարմիր դրոշի շքանշան:

ՄԽԻԹԱՐՅԱՆ Աղեքսանդր Մխիթարի (1846–1916), բանասեր, բանահավաք: Գրառել է Շիրակ ու Վանանդ գվո–ների հեքիաթներ, առակներ, առածներ, երգեր ու պարերգեր («Տաղեր ու խաղեր», 1900, «Փշրանք Շիրակի ամբարներից», «Էմինեան ազգագրական ժողովածու», 1901), թարգմանել արլ. հեքիաթներ («Շիրին և Ֆահրատ», «Լեյլի և Մեջնուն», «Շահ Իսմայիլ» ևն), կազմել և խմբագրել աշուղ. երգարաններ:

ՄԽԻԹԱՐՅԱՆ Ամալյա Հուսիկի (1912–1987), տիկնիկավար–դերասանուհի: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1965): 1936–67–ին՝ ԵՏԹ հիմնադիր–դերասանուհիներից (Եղեգնուհի՝ «Եղեգնուհի»՝ ըստ Ղ. Աղայանի, Մանուշ, Գառնիկ՝ «Գառնիկ ախպեր»՝ ըստ Հ. Թումանյանի, Մալվինա՝ «Ոսկե բանալի»՝ ըստ Ա. Ն. Տոլստոյի, ևն):

ՄԽԻԹԱՐՅԱՆ Անահիտ Հարությունի (ծ. 1965), երգչուհի (քնարակոլորատուր. սոպրանո): ՀՀ վաստ. արտիստ (2003): 1991–ից՝ ԵՕԲԹ–ի մենակրչուհի (Կարինե, Օլիմպիա՝ S. Զուխաճյանի «Լերլերիջի Հոր–հոր աղա», «Արշակ Երկրորդ», Դեզդեմոնա, Վիոլետա՝ Ջ. Վերդիի «Օթելլո», «Տրավիատա», Անուշ՝ Ա. Տիգրանյանի «Անուշ», ևն): Երկացանկում՝ Կոմիտասի, նաև արևմտաեվրոպացի կոմպոզիտորների հայ հոգևոր երգեր:

Ֆ. Վինյասի (1990, Իսպանիա), Վ. Բելլինիի (1991, Իտալիա) անվ., «Գայարե–Կարերաս» (Իսպանիա, 1996) միջազգ. մրցույթների 1–ին մրց., Մեծ մրց., ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2–րդ աստիճանի մեդալ (2013):

ՄԽԻԹԱՐՅԱՆ Ասլան Կամոյի (ծ. 1947), ճարտ.: 1993–96–ին՝ Երևանի գլխ. ճարտ.: Նախագծերով Երևանում կառուցվել են «Հայաստան» հուշահամալիրը («Կասկադ», 1980–2004, համահեղ.), հուշարձաններ՝ նվիրված ՀՄՊ–ում զոհվածների, ֆիդայիների (1994), Արծվաշենի (1994), Արցախի պաշտպանների (2000, վերջին երկուսը՝ Եռաբլուրում) հիշատակին, «Անդրանիկի ձիարձանը» (2002, Երևան), Հ. Շիրազի (1994), Ս. Փարաջանովի (1999, երկուսն էլ՝ Կոմիտասի անվ. զբոսայգու պանթեոնում) մահարձանները, Վ. Սարգսյանի հուշապատը (1999, չորսն էլ՝ քանդ.՝ Ա. Շիրազ) ևն:

ՄԽԻԹԱՐՅԱՆ Արա Անուշավանի (ծ. 1934), ճարտարագետ–մեխանիկոս, տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1982), պրոֆ. (1991): Աշխ–ները վերաբերում են արդ–յան արդյունավետության, երկրորդ. հումքի օգտագործման, տնտ. մեխանիզմի արմատ. վերափոխումների, արտադր–յան տեխ. զարգացման, վերջն. արդյունքների կառավարման հարցերին:

ՄԽԻԹԱՐՅԱՆ Արբակ Տիգրանի (1911–2004), եգիպտաբան, Հին աշխարհի արվ–ների և կրոնների տեսաբան, պատմաբան, հնագետ: 1964–76–ին՝ Բրյուսելի արվ–ի և պատմության թագավոր. թանգարանի բաժնի վարիչ: Մասնակցել է պեղումների Եգիպտոսում, Սուդանում: 1968–69–ին ուսումնասիրել է Երուսաղեմի հայկ. գանձերն ու գանձարանները: Աշխ–ները լույս են տեսել հայ., ֆրանս., գերմ., անգլ. և հոլ.:

ՄԽԻԹԱՐՅԱՆ Արտաշես Գաբրիելի (1918–1986), գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1970), պրոֆ. (1971): Հեղինակ է «Սովետահայ գրականությունը Վրաստանում» (1978), «Ժամանակակից հայ արձակը» (ռուս., 1982), «Ժամանակակից սովետահայ արձակագիրներ» (1985) աշխ–ների:

ՄԽԻԹԱՐՅԱՆ Արտաշես Մելքոնի (1912–1998), ճարտարագետ, մեխանիկոս: Տեխ. գիտ. դ–ր (1953), պրոֆ. (1957): Ուկր. ԽՍՀ վաստ. գործիչ (1980): Արտավազդ *Մխիթարյանի* եղբայրը: Աշխ–ները վերաբերում են հիդրավլիկայի և հիդրոմեխանիկայի հարցերին, թռիչքի կառավարման դինամիկային և աերոդինամիկային, գազադինամիկ. և էլեկտրագազադինամիկ. շիթային հոսանքների տեսությանը:

ՄԽԻԹԱՐՅԱՆ Արտավազդ Մելքոնի (1918–1976), հիդրօդերևութաբանության և հիդրոմեխանիկայի բնագավառի գիտ–

նական: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1965), պրոֆ. (1960): Արտաշես ***Միխթարյանի*** եղբայրը: Աշխ–ները վերաբերում են հիդրոդինամիկային և մթն–ի ֆիզիկային, Սևանա լճի ջր. հավասարակշռության հարցերին: ԽՍՀՄ ԳԱ Գ. Կրիժիժանովսկու անվ. մրց. (1976):

ՄԽԻԹԱՐՅԱՆ Գրիգոր Սևակի (ծ. 1986), շախմատիստ: Գրոսմայստեր (2010), Բրազիլիայի հավաքականի անդամ, Բրազիլիայի չեմպիոն (2012, 2016): Հաղթել է մի շարք միջազգ. մրցաշարերում:

ՄԽԻԹԱՐՅԱՆ Գուրգեն Ենոքի (1919–1999), փիլ.: Փիլ. գիտ. դ–ր (1972), պրոֆ. (1974): Աշխ–ները վերաբերում են պատմ. մատերիալիզմի փիլ–յան և սոցիոլոգիայի պատմության խնդիրներին («Ազատություն և անհրաժեշտություն», 1963, «Սոցիոլոգիական ուսմունքների պատմություն», պր. 1–4, 1971–82):

ՄԽԻԹԱՐՅԱՆ Հարություն Համազասպի (1942–2011), քիմիկոս–տեխնոլոգ: Քիմ. գիտ. դ–ր (2002): Աշխ–ները վերաբերում են ցածրջերմաստիճան. պինդֆազ. պայթյունընթաց ռեակցիաներին: Հայտնաբերել է (Նիկոլայ ***Ենիկոլոպյանի*** հետ) առաձգ. ալիքներով հարուցվող գերարագ ընթացող կարծրաֆազ ռեակցիաներ:

ՄԽԻԹԱՐՅԱՆ Հենրիխ Համլետի (ծ. 1989), ֆուտբոլիստ: Հայաստանի ազգ. հավաքականի ավագ (2015–ից): 7 անգամ ճանաչվել է Հայաստանի լավագույն ֆուտբոլիստ (2009, 2011–16): Խաղացել է Բորուսիայի «Դորտմունդ» (2013–2016), «Մանչեստր Յունայթեդ» (2016–18), «Արսենալ» (2018–ից) ակումբների թիմերի կազմում: ՈՒԵՖԱ–ի Եվրոպայի լիգայի չեմպիոն «Մանչեստր յունայթեդ»–ի կազմում (2017): Հայաստանի ազգ. հավաքականի պատմության լավագույն ռմբարկուն՝ 59 խաղում խփած 20 գնդակով:

Երևանի պատվ. քաղաքացի (2012):

ՄԽԻԹԱՐՅԱՆ Մարջան Սամիկոնի (1918–1999), դաշնակահարուհի: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1983): Պրոֆ. (1985): Ռոբերտ ***Աթայանի*** կինը: Հանդես է եկել որպես մենակատար, նաև անսամբլների, սիմֆ. նվագախմբի հետ: 2003–ին Երևանում անցկացվել է Ռ. Աթայանի և Մ–ի անվ. պատանի դաշնակահարների 1–ին մրցույթը:

ՄԽԻԹԱՐՅԱՆ Միհրան Հովհաննեսի (1904–1972), ճարտ.: ՀԽՍՀ վաստ. շինարար (1966): 1937–39–ին՝ Հայպետնախագիծ նախագծ. տրեստի տնօրեն: Նախագծերով Երևանում կառուցվել են ժամացույցի գործարանի գլխ. մասնաշենքը (1948), Կոմպլեքս. էլեկտրասարքավորման ԳՀԻ (1960), կաբելի գործարանի համալիրը (1963), Ալավերդիում՝ գարեջրի գործարանը (1953), Վանաձորում՝ պոլիմեր. սոսինձների ԳՀ և նախագծ. ինստ–ը (1958):

ՄԽԻԹԱՐՅԱՆ Նվեր Մնացականի (ծ. 1960), ճարտարագետ, շինարար: Տեխ. գիտ. դ–ր (1996), պրոֆ. (2001): ՀՀ ԳԱԱ արտ. (2004), Ուկր. ԳԱԱ թղթ. (2003) անդամ: Ուկր. վաստ. շինարար (1999): ՌԴ վաստ. ճարտարագետ (2000), Կիևի «Պոզնյակ–բնակշին» կորպորացիայի հիմնադիր–տնօրեն (1996–2004, ապա՝ վերահսկիչ խորհրդի նախագահ), 2003–ից՝ Ուկր. ԳԱԱ վերականգնող. էներգիայի ինստ–ի հիմնադիր–տնօրեն: Շին–յան մեջ հիմնադրել է բնակարանային շին–յան ճարտ. կառուցվածք. տեխնոլոգ. համակարգի նոր ուղղություն: Գիտ. հետազոտությունները նվիրված են հիմնականում շին–յան, էներգամատակարարման և ոչ ավանդ. էներգետիկայի հարցերին:

Ուկրաինայի հայերի միության նախագահ (2002–05): Ուկրաինայի Պետ. մրց. (2003):

ՄԽԻԹԱՐՅԱՆ Ռազմիկ Սարգսի (ծ. 1947), կենսաբան–ձևաբան: Կենսբ. գիտ. դ–ր (2001), պրոֆ. (2004): Աշխ–ները վերաբերում են երևանյան և լեգհոռն հավերի ցեղերի կմախքի ու մկանունքի համեմատ. անատոմահյուսվածաբան. և ֆիզքիմ. առանձնահատկություններին:

ՄԽԻԹԱՐՅԱՆ Ռոզա Սարկոսի (ծ. 1931), դերասանուհի: ՀՀ ժող. արտիստ (2008): 1957–ից՝ Վանաձորի պետ. դրամատիկ. թատրոնի դերասանուհի (Նուբար՝ Ա. Պապայանի «Աշխարհին, այո, շուտ է եկել», Յուլինկա՝ Ա. Ն. Օստրովսկու «Եկամտաբեր պաշտոն», Արուս՝ Հ. Սաթևոսյանի «Աշնան արև», Սմերալդինա՝ Կ. Գոլդոնիի «Երկու տիրոջ ծառա», Անֆիսա՝ Ա. Պ. Չեխովի «Երեք քույր», Սաշիկո՝ Ն. Դումբաձեի «Մի վշտանա, մայրիկ», ևն):

ԽՍՀՄ «Արիության համար» (1965, 1973), ՀՀ «Մովսես Խորենացի» (2004), ՀՀ ՄՆ ոսկե (2011), ՀԹԳՄ ոսկե (2011, 2013) մեդալներ, Մ. Սիմոնյանի անվ. «Արտիստ» մրց. (2006):

ՄԽԻԹԱՐՅԱՆ Սարգիս Մխիթարի (ծ. 1959), գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (2010): Հեղինակ է «Գր. Սագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը» (2001), «10–11–րդ դարերի հայ մշակութային դաշտը և գրականության զարգացման միտումները» (2009), «Միջնադարյան Գետարգելի (Զագավանքի) պատմությունը» (2014) աշխ–ների:

ՄԽԻԹԱՐՅԱՆ Ստեփանոս (1845–1892), բանասեր, եկեղեց., հաս., կրթ. գործիչ: 1872–ին՝ Տաթևի վանքի վանահայր, ապա՝ Բեսարաբիայի ու Նոր Նախիջևանի, 1886–92–ին՝ Ատրպատականի թեմերի առաջնորդ: Հեղինակ է «Ստորագրութիւն հոչակաւոր մեծի ուխտին Այրի վանաց...» (1873), «Ստորագրութիւն հոչակաւոր ս. Գևորգայ վանուց...» (1889), նաև անտիպ աշխ–ների:

ՄԽԻԹԱՐՅԱՆ Սուրեն Արտեմի (1911–1988), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1966): 1952–ից՝ ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստ–ի (Մոսկվա) բաժնի վարիչ: Աշխ–ները (ռուս.) վերաբերում են Վիետնամի, Լաոսի, Կամպուչիայի ժողդ–ների ազգ–ազատագր. և դասակարգ. պայքարի պատմությանը:

ՄԽԻԹԱՐՅԱՆ Սուրեն Մանուկի (ծ. 1939), մեխանիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1991), պրոֆ. (1992): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2010): Աշխ–ները վերաբերում են ձևափոխվող զանգվածեղ մարմինների և դրոշմների, ճաքերի, բարակապատ վերդրակների ու ներդրակների տիպի լարումների կենտրոնացուցիչների միջև փոխազդեցության հետ կապված հպում. և խառը եզրային խնդիրներին: ՃՇՀԱՀ Ֆիմ Թորոսյանի անվ. ոսկե մեդալ (2011):

ՄԽԻԹԱՐՅԱՆ Վահան Գրիգորի (1910–1982), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դ–ր (1964), պրոֆ. (1965): ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1968): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1981): Ուսումնասիրել է գերհույզային վիճակների և շաքարախտի կենսաքիմիան: Պարզել է, որ նշված վիճակներում լիպիդային գերօքսիդացման շարժընթացն ուժեղանում է, ավելանում է ազատ ռադիկալների քանակը, ճնշում որոշ հակառադիկալ. ֆերմենտների ակտիվության, բջջաթաղանթի թափանցելիության վրա:

ՀԽՍՀ ԳԱ վաստակավոր գործիչ (1976):

ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ՄՄ), ***Մխիթարյաններ***, հայ կաթոլիկ վան. և մշակութ. հաստատություն: Հիմնադրել է ***Մխիթար Սեբաստացին*** 1701–ին Կ. Պոլսում՝ հոգևոր, ուսումնակրթ., գիտ. և մշակութ. գործունեություն ծավալելու նպատակով: 1715–ից հաստատվել է Վենետիկի Սբ Ղազար կղզում, որը 1717–ին Վենետիկի Ծերակույտը հրովարտակով շնորհել է ՄՄ–ին: 1712–ին Վատիկանը Մխիթար Սեբաստացուն ճանաչել է ՄՄ առաջնորդ, նրան շնորհել աբբահոր կոչում: 1810–ին ***Նապոլեոն I***–ը Սբ Ղազարի հայկ. միաբանությունը ճանաչել է գիտ. հաստատություն՝ «Հայկական ակադեմիա» տիտղոսով: 1789–ին հիմնադրվել է Սբ Ղազարի տպարանը, որտեղ կրոն. գրկ–յանը զուգահեռ հրատարակվել են Մխիթարյանների պատմաբանասիր., աշխարհագր., աստվածաբան. աշխ–ները, գր–գեղ. ստեղծագործություններ, բառարաններ, համաշխ. և հայ դասականների երկեր, 1843–ից՝ ***«Բազմավէպ»*** հանդեսը և այլ պարբ–ներ: Մխիթար Սեբաստացու անձն. գրադարանի հիմքի վրա ստեղծվել է ***Վենետիկի մատենադարանը***:

1772–ին կանոնադրության փոփոխության հետ կապված տարաձայնության պատճառով Մխիթարյանների մի խումբ թողել է Վենետիկը, հաստատվել Տրիեստում, 1810–ից՝ Վիեննայում, որտեղ հիմնադրել են իրենց տպարանը, ծավալել գրահրտչ. բուռն գործունեություն: Տպագրել են գրքեր շուրջ 50 լեզվով, նաև ***«Հանդէս ամսօրեայ»*** ամսագիրը և այլ պարբ–ներ, ստեղծել են ***Վիեննայի մատենադարանը***: 1811–ին Ավստրիայի կառ–յունը ճանաչել է նրանց միաբանությունը:

2000–ին ՄՄ–ի երկու թևերը միավորվել են, ստեղծվել է Մխիթարյան միացյալ միաբանություն՝ մեկ կենտր. վարչությունով: ՄՄ–ի գործունեության կարևոր ոլորտներից է ուսումնակրթ. առաքելությունը: 1732–ին Սբ Ղազարի վանքին կից հիմնադրվել է ճեմարան (ակադ.): Հետագայում ***Մխիթարյան վարժարանները*** են բացվել տարբեր վայրերում: ՄՄ հայ գիտամշակութ. կյանքում կարևոր ներդրում է ունեցել նաև իր պարբ. մամուլով («Բազմավէպ», «Հանդէս ամսօրեայ», «***Եղանակ Բիւզանդեան***», «***Հայ ընտանիք***» ևն):

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ, ***Մխիթարյան միաբանության*** հիմնադրած հայկ. դպրոցները: 1717–ին Սբ Ղազարում բացվել է ճեմարան (ակադ.), 1832–ին՝ ***Սամվել Մուրադյան*** (Պադուա, ապա՝ Փարիզ), 1836–ին՝ ***Մուրատ–Ռափայելյան*** (Վենետիկ) ***վարժարանները***: XIX դ–ում Կ. Պոլսում գործել է Վենետիկի Մխիթարյանների 6 նախակրթարան, 1825–ից՝ Վիեննայի Մխիթարյան վարժարանը: Վերջիններս դպրոցներ են բացել հունգարահայ և ռումինահայ գաղթավայրերում՝ Վարատինում (1749), Սիբվիզում (1797), Եղիսաբեթուպոլսում (1746), նաև Տրապիզոնում (1817), Ղարասուբազարում (1821), Ախալցխայում (1831), Սիմֆերոպոլում (1850), Պարտիզակում (1883), Սավորայում (1885), Նիկոմեդիայում (1887), Մուշում (1892), Մերդինում (1911), Խարբերդում (1912), Քավթաղլու գ–ում (այժմ՝ գ. Փանիկ, ՀՀ Շիրակի մարզ), մինչև 1914–ը՝

ընդհ. թվով՝ 26 դպրոց: 1918–ին Կ. Պոլսում հիմնադրել են որբանոց–դպրոց (1922–ին տեղափոխվել է Միլան): 1930–ական թթ–ից հայկ. դպրոցներ են հիմնադրվել Ալեքսանդրիայում, Հալեպում, Բեյրութում, ավելի ուշ՝ Բուենոս Այրեսում, ԱՄՆ–ում (Լա Քրեսենթա, Լոս Անջելես) և այլուր:

ՄԽՈ ՇԱՀԵՆ (Սեֆերյան Մխիթար, 1866–1903), ազգ–ազատագր. շարժման գործիչ, ֆիդայի: 1887–ին Տերգեվանքում (Սյո գվո) կազմակերպել է հայդուկ. խումբ: Գործել է *Սարգար Վարժապետի*, *Արաբոյի* հետ: Կիլիկիայում ղեկավարել է Չոք Մարզվանի 1896–ի ինքնապաշտպ–յունը: Սպանել են *Վերակազմյալ հնչակյանները*:

ՄԽՈՅԱՆ Գագիկ Գնունու (1950–2009), աննսթեզիոլոգ–ռեանիմատոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (1995), պրոֆ. (2003): ՀՀ վաստ. բժիշկ (2008): Աշխ–ները վերաբերում են շնչափողահատման, շնչափողի ինտուբացիայի, սիրտ–թոքային վերակենդանացման, արյան փոխներարկման ժամանակակից խնդիրներին: ՀՀ աննսթեզիոլոգների և ռեանիմատոլոգների միության նախագահ (1996–ից), ՀՀ գլխ. աննսթեզիոլոգ–ռեանիմատոլոգ (1998–ից):

ՄԽՈՑ, շարժ. մեքենամաս, որը գլանի ներսում նրա երկայնքով կատարում է համընթաց–հետընթաց շարժում: Ծառայում է մեխ. էներգիան հեղուկի (գազի) ճնշման էներգիայի կամ հակառակը փոխակերպելու համար: Օգտագործվում է շարժիչներում, պոմպերում, ճնշականրում, մամլիչներում և այլուր:

ՄԽՈՒՄ (տեխ.), նյութերի (ավելի հաճախ՝ մետաղների, համաձուլվածքների) ջերմամշակում՝ նրանց ամրություն հաղորդելու նպատակով. կատարվում է դրանք մինչև բարձր ջերմաստիճաններ տաքացնելով և արագ հովացնելով:

ՄԾԲԻՆ (հուն.՝ Նիսիբին), ք. Վերին կամ Հայոց Միջագետքում՝ այժմյան Նիսիբին ք–ի (Թուրքիայի Դիարբեքիրի նհնզ) մոտ՝ Խաբուր գետի Ջախջախ վտակի ափին: Միգդոնիայի մայրաքաղաքն էր, Տիգրան Բ–ի օրոք (մ. թ. ա. 95–55) մտել է հայկ. տերության մեջ, եղել վերջինիս Արվաստան երկրի գլխ. կենտրոնը: Քրիստոնեության տարածման նշանավոր կենտրոն էր: VII դ–ում գրավել են արաբները, XVI դ–ում՝ թուրքերը: XX դ–ի սկզբին ունեցել է մոտ 7 հզ. բն., որից շուրջ 1000–ը՝ հայեր. 1915–ին մի մասը ոչնչացվել է, մյուսները տարագրվել են: Պատմ. Մ–ից պահպանվել են պարիսպների մնացորդները, մի քանի եկեղեցիների ավերակներ և շենքերի փլատակներ:

ՄԾԲԻՆԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 298, կնքվել է *Մծբին* ք–ում՝ Պարսից արքա Ներսեհի և հռոմեացի պաշտոնյա Սիկորիոս Պրոբոսի միջև՝ 296–297–ի հռոմեա–պարսկ. պատերազմից հետո: Պարսկաստանը Հռոմ. կայսրությանն է զիջել պատերազմի ժամանակ գրաված Միջագետքը, հայկ. Անգեղ տուն, Ծոփք, Աղձնիք, Կորդուք և Ծավդեք տարածքները, Տրդատ Գ Մեծը ճանաչվել է ողջ Հայաստանի թագավոր:

ՄԾՂՆԵՈՒԹՅՈՒՆ, աղանդավոր. շարժում Հայաստանում V դ–ում: Դատապարտվել է *Շահապիվանի ժողովում*: Շարժումն ունեցել է հակաեկեղեց. և հակաավատատիր. բնույթ: Հետագայում մծղնեականները հարել կամ ձուլվել են պավլիկյաններին (տես *Պավլիկյան շարժում*):

ՄԾՈՒՐԲ, *Մծուրբ*, ք. *Տուրուբերան*ի նհնգ–ի Տարոն գվո–ում՝ Արածանիի և Մեղրագետի միախառնման վայրում: Հիմնադրել է *Սանապրուկ* թագավորը: Հավանաբար ավերվել է (IV դ–ի 2–րդ կես) Սասանյան Շապուհ II թագավորի արշավանքների հետևանքով:

ՄԿԱՆԱԹԵԼԵՐ, **միոֆիբրիլներ** (< *միո*... և նոր լատ.՝ fibriela – թել, թելիկ), կծկողունակ թելեր (տրամագիծը՝ 0,5–ից մինչև մի քանի *մմ*)՝ սրտամկանի և միջաձիգ զոլավոր մկանների պրոտոպլազմայում: Կազմված են սպիտակուց. թելերից՝ պրոտոմիբրիլներից:

ՄԿԱՆԱԹՈՒԼՈՒԹՅՈՒՆ, **միասթենիա** (< *միո*... և astenia – թուլանալ), քրոնիկ. առաջադիմող հիվանդություն: Բնորոշվում է միջաձիգ զոլավոր մկանների թուլությամբ, ցավոտ հոգնածությամբ, որոնք ի հայտ են գալիս սովոր. ֆիզ. աշխ–ից հետո:

ՄԿԱՆԱՅԻՆ ԿԾԿՈՒՄ, մկանի կարճացում, որի շնորհիվ այն մեխ. աշխ. է կատարում: Մ. կ. ֆիզիոլոգ., կենսաքիմ. և կենսաֆիզ. բարդ կենսընթաց է: Ժամանակակից տեսության համաձայն (Ջ. Հանսոն և Հ. Հաքսլի, 1955, 1960)՝ Մ. կ–ման ժամանակ մկանաթելերում պարունակվող *ակտին* և *միոզին* սպիտակուցների թելիկները չեն կարճանում, այլ սահում են միմյանց վրայով, ակտինի թելիկները թափանցում են միոզինի թելիկների մեջ, և առաջանում է ակտոմիոզին, որի հետևանքով մկանաթելերի երկ–յունը կրճատվում է: Կենսընթացը տեղի է ունենում ԱԵՖ–ի ճեղքման էներգիայի հաշվին՝ կալցիումի իոնների ներկայությամբ: Օրգանիզմում ընթացող բոլոր շարժումները (բացառությամբ էպիթելի թարթիչների շարժումների) պայմանավորված են Մ. կ–ով:

ՄԿԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ, մկանների և սովորաբար շարակց. հյուսվածքով իրար միացած մկանախրձերի համակարգ: Միաբջիջ օրգանիզմները և սպունգները Մ. հ. չունեն, լավ զարգացած է ողնաշարավորներինը (կազմում է մարմնի զանգվածի 1/3–1/2–ը): Իրականացնում է օրգանիզմի շարժումները, մարմնի հավասարակշռության պահպանումը, նաև շնչառ. շարժումները, օրգանիզմի ներսում սննդի, արյան տեղափոխությունը: Հյուսվածքներում Մ. հ–ի քիմ. էներգիան փոխարկվում է մեխ–ի և ջերմայինի:

ՄԿԱՆԱՈՒԻՈՒՅՔ, **միոմա**, մկան. հյուսվածքի բարորակ ուռուցք: Հաճախ զարգանում է հարթ մկանունքով օրգաններում (լեյոմիոմա), հազվադեպ՝ կմախքի միջաձիգ զոլավոր մկաններում և սրտամկանում (ռաբդոմիոմա):

ՄԿԱՆՆԵՐ, մարդու և կենդանիների կմախքի ու ներքին օրգանների մկանունքը՝ կազմված մկանային հյուսվածքից, որն ընդունակ է կծկվել նյարդ. ազդակների ներգործության տակ:

ՄԿՆԱՃՄՈՒՌԱԿՆԵՐ (Circus), *ճուռակների* ընտանիքի գիշատիչ թռչուններ: Գլխի դիմային մասը շրջապատված է ցցված փետուրների պսակով: Երկ.՝ 41–61 *սմ*: Հայտնի է 9 տեսակ, ՀՀ–ում՝ 4՝ դաշտ., ճահճ., մարգագետն., տափաստան. Մ.: Մկնակերպ կրծողներով սնվելու (այստեղից՝ անվանումը) որոշակի հակվածություն ունեն:

ՄԿՆԱՍՈՒԼ (Scilla), **բիծ, գայլասխտոր**, շուշանազգիների ընտանիքի բազմամյա սոխուկավոր խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 60 (այլ տվյալներով՝ 90) տեսակ՝ հիմնականում Միջերկրածովայքում՝ անտառներում, ենթալպ. մարգագետիններում, ՀՀ–ում՝ 6 (7)՝ Վայոց ձորի, Սյունիքի, Շիրակի և այլ մարզերում: Միշչենկոյի և Ռոզենի Մ–երը գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

ՄԿՆԱՓՈՒՇ (Ruscus), շուշանազգիների ընտանիքի երկտուն, մշտադալար կիսաթփերի ցեղ: Հայտնի է 5 (6) տեսակ՝ Կանարյան, Ազորյան կղզիներում, Արմ. Եվրոպայում, ՌԴ–ում (Ղրիմ, Կովկաս): Բոլոր տեսակները մշակվում են որպես գեղազարդիչներ, իսկ որոշ տեսակներ գղտ. կենդանիների կեր են:

ՄԿՆԵՐ (Muridae), **մկնանմաններ**, սովոր. կրծողների կարգի կաթնասունների ընտանիք: Սարմնի երկ.՝ 5–50, պոչինը՝ մինչև 45 *սմ*: Հայտնի է մոտ 480 տեսակ: Տարվել է Ամերիկա և մի շարք կղզիներ: Տնային մուկը և որոշ առնետներ սինանտրոպ կենդանիներ են (ապրում են շինություններում): Մեծ վնաս են պատճառում գղտ–յանը: Բազմաթիվ մակաբույծների բնական կրողներ են, մարդու և կենդանիների վարակիչ (այդ թվում՝ հատուկ վտանգավոր) հիվանդությունների (ժանտախտ ևն) փոխանցողներ են: Վնաս են պատճառում գղտ–յանը, անտառատնտ–յանը, փչացնում են սննդամթերքը և այլ ապրանքներ: Սպիտակ տեսակները լաբորատոր կենդանիներ են: ՀՀ–ում հանդիպում է Մ–ի 4 տեսակ՝ սև և մոխրագույն առնետները, տնային և անտառային Մ.:

ՄԿՐՅԱՆ Հովհաննես Կարապետի (1831–1909), բանասեր, պատմաբան, հաս. գործիչ, քհն. (1866–ից): Կ. Պոլսի պատրիարքարանի փոխանորդ: Որպես պատրիարքարանի պատվիրակ՝ 1878–ին Հայկ. հարցի քննարկման կապակցությամբ մեկնել է Լոնդոն՝ իր հետ տանելով Արմ. Հայաստանի վիճակի մասին տեղեկագիր: Հեղինակ է «Կենսագրութիւն Մեսրովբայ Դաւթեան Թաղիադեանց Երևանեցւոյ» (1886) աշխ–յան, «Մահարձանք եւ յիշատակարան...» (1877) հնագիտ. նյութերի, «Աղօթագիրք ըստ ժամակարգութեան Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ» (1883) հայ եկեղեցու ողջ ժամերգությունների ժող–ների:

ՄԿՐՅԱՆ Մկրտիչ Սամբրեի (1907–1983), գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1945), պրոֆ. (1946): ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1956): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): 1947–53–ին՝ ՀԽՍՀ ԳԱ գրկ–յան ինստ–ի տնօրեն: Հեղինակ է «Գրիգոր Նարեկացի» (1955), «Էջեր հայ վիպասանության պատմությունից» (1957), «Մովսես Խորենացի» (1970), «Հայ հին գրականության պատմություն (V–X դարեր)» (1976), «Խսահակյանի հումանիզմը» (1975), «Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը» (1981), «Գրականության պատմության հարցեր» (1982) աշխ–ների: Կազմել է հայ գրկ–յան քրեստոմատիաներ, դասագրքեր:

ՄԿՐՏԱՐԱՆ, շինություն *մկրտության* ծիսակատարության համար: Տարբերում են Մ–ի 2 տիպ՝ ա. մկրտության ավազանը տեղադրվել է հատուկ շենքում (մկրտատուն, կառուցվել է մինչև XIV դ.), բ. եկեղեցում կամ նրան կից: Մկրտատան և ավազանի հատակագծերը հիմնականում բոլորաձև են, բազմանիստ և խաչաձև:

ՄԿՐՏԻՉ (Մկրտչյան) Կորյուն Գրիգորի (1913–1984), բանաստեղծ, առակագիր:

Հեղինակ է «Կյանքի և սիրո երգեր» (1937), «Իմ նվերը» (1954) և այլ բանաստեղծությունների, «Առակներ, հեքիաթներ, պատմվածքներ» (1945), «Հեքիաթներ, պիեսներ» (1961), «Մանկական աշխարհ» (1982) ժող–ների, «Կամո» (1947) պատմա–կենսագր. վեպի: Մ. նպաստել է հանելու–կի և առակի ժանրի զարգացմանը:

ՄԿՐՏԻՉ Ա. ՎԱՆԵՑԻ (Խրիմյան Մկրտիչ), **Խրիմյան Հայրիկ** (1820–1907), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1892–ից: Հաս–քաղ., մշակութ., կրթ. և ազգ–ազատագր. շարժ–ման գործիչ: Հիմնադրել է ***«Արծուի Վաս–պուրական»*** (1855), «Արծուիկ Տարօնոյ» (1863) պարբ–ները, Վարագավանքի Ժա–ռանգավորաց գիշերօթիկ վարժարանը (1857), Սշո Սբ Կարապետ վանքին կից Ժառանգավորաց վարժարանը (1862): 1868–ին՝ եպս., 1869–73–ին՝ Կ. Պոլսի հա–յոց պատրիարք (օսմ. իշխանությունների հարկադրանքով հրաժարական է տվել): 1878–ին գլխավորել է հայկ. պատվիրա–կությունը ***Բեռլինի վեհաժողովում***, որի հետ է կապված «թղթե շերեփի» պատ–մությունը: Հիասթափվելով արդյունքնե–րից՝ շրջադարձ է կատարել դեպի ազգ–ազատագր. պայքարը: Ընտրվելով (1879) Վասպուրականի հոգևոր առաջնորդ՝ 1880–ին Վանում բացել է երկրագործ. ուսումնարան, աջակցել Վանի «Սև խաչ» և Կարինի «Պաշտպան Հայրենյաց» ազգ–ազատագր. գաղտնի կազմ–յուններին: Պայքարել է ցար. կառ–յան 1903–ի հունի–սի 12–ի եկեղեցապատկան կալվածքները բռնագրավելու օրենքի իրագործման դեմ. հրամայել է թեմ. առաջնորդներին չենթարկվել այդ որոշմանը: Հեղինակ է կրոնաբարոյախոս., հրապարակախոս., ազգագր. և այլ աշխ–ների:

ՄԿՐՏԻՉ ՆԱՂԱՇ (մոտ 1394–մոտ 1470), տաղերգու, նկարիչ, հաս., եկեղեց. գոր–ծիչ: 1430–ին ձեռնադրվել է եպս., 1437–ին՝ Ամիդի եպս. և Միջագետքի հայոց հո–գևոր առաջնորդ: Գրել է տաղեր, որտեղ խորացրել է միջնադար. հայ քնարեր–գության աշխարհիկ բնույթը («Մկրտիչ Նաղաշ եւ իւր տաղերը», 1898, «Տաղեր», 1905), հիշատակարաններ, «Պատասխան ի լատինացոց թխտոյն» (1436) պատմ. փաստաթուղթը, «Արարիչն Արաբացոց» (1469) ողբը: Հմուտ նկարիչ լինելու հա–մար ստացել է «Նաղաշ» մականունը: Հմուտ է եղել նաև գրչարվ–ում:

ՄԿՐՏԻՉ ՕՐԲԵԼԵՆՑ, XV դ–ի 1–ին կեսի գրիչ, վրդ.: Մինչև 1410–ն ընդօրինակել է ուսուցչի՝ Գրիգոր Տաթևացու «Գիրք Հարցմանց»–ը (Կարապետ կրոնավորի և Թումա գրիչի հետ), 1420–ին Բերկրիի Տեր–Հուսկանորդու վանքում՝ Ավետա–րան: Մ. Օ–ի մասին վերջին անգամ հի–շատակվել է 1432–ին Արճեշում:

ՄԿՐՏԻՉԵՎ Արկադի Նիկոլայի (ծ. 1954), ՌԴ ռազմ. և պետ. գործիչ, գեն–լեյտ. (2007, գեն–մայոր՝ 1999–ից): Հեռավորարվ. ՋՕ–ում եղել է բրիգադի, դիվիզիայի, կորպուսի, զորքերի հրամ–ի տեղակալ, 2006–10–ին՝ նյութատեխ. մատակարարման գծով տե–ղակալ: Մասնակցել է Չեչնիայի ռազմ. գործողություններին: 2010–15–ին՝ Խաբա–րովսկի երկրամասի կառ–յան փոխնախա–գահ, 2015–ից՝ 1–ին տեղակալ:

ՌԴ «Քինվորական վաստակի համար», Սիբիայի «Մարտական պատրաստութ–յան» շքանշաններ, ՌԴ «Հայրենիքին մատուցած ծառայության համար» 2–րդ աստիճանի և այլ մեդալներ:

ՄԿՐՏԻՉԵՎ Վլադիմիր Յակովի (ծ. 1936), ճարտարագետ, մեխանիկոս: Աշխ–ները վերաբերում են ՋՈՒ–ում և ժողտնտ–յան մեջ կիրառվող ջրազտիչ և ջրանալիաց–նող սարքերի մշակման ու նախագծման հարցերին: ՌԴ Պետ. մրց. (2000), Ժնևի գյուտարարության և հայտնագործության միջազգ. սալոնի արծաթե մեդալ (2000):

ՄԿՐՏԻՉԵՎ Վյաչեսլավ Անդրոնիկի (ծ. 1952), ըմբիշ: Միջազգ. կարգի ս. վ. (1972), ՌԴ ֆիզկուլտուրայի վաստ. գործիչ (2001), ՌԴ վ. մ. (2013): ՌԴ հունա–հռոմ. ոճի ըմբշամարտի հավաքականի մարզիչ (2016): ԽՍՀՄ չեմպիոն (1979, 1980), Եվ–րոպայի առաջնության արծաթե մեդալա–կիր (1979, 1980):

ՌԴ «Պատվո նշան» (2006), «Հայրենի–քին մատուցած ծառայությունների հա–մար» 2–րդ աստիճանի (2010) շքանշաններ:

ՄԿՐՏԻՉԵՎ Օլեգ Վարդանի (ծ. 1947), շենքերի և շինությունների սեյսմակայու–նության բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1993), պրոֆ. (1995): Աշխ–ները վերաբերում են շենքերի և շինություննե–րի հաշվարկման խնդիրներին՝ սեյսմիկ և վթարային ազդեցությունների ժամանակ՝ ոչ գծային դինամիկ. դրվածքի դեպքում:

ՄԿՐՏԻՉՅԱՆ Արթուր Երվանդի (ծ. 1966), փիլ., սոցիոլոգ: Փիլ. գիտ. դ–ր (2008), պրոֆ. (2011): Աշխ–ները վերաբերում են սոցիալ. փիլ–յան հարցերին: 2008–ից՝ ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակ–ի դեկան:

ՄԿՐՏՉՅԱՆ եղբայրներ: Սերգեյ Զանի–բեկի Մ. (1947–2000), նկարիչ: Հեղինակ է «Կառք», «Կոմպոզիցիա», «Համբույր», «Փշե պսակով Քրիստոսը», «Տրդատ ճարտարապետ» և այլ գործերի: **Լևոն Մ.** (ծ. 1952), ճարտ.: Նախագծել է բուժ. և առողջարան. շենքեր (Ջերմուկ, Լուսա–կերտ, Հալեպ), բազմաթիվ խաչքարեր: **Սմբատ Մ.** (ծ. 1953), քանդ.: Հեղինակ է ՀՄՊ–ում (1941–45) զոհվածների հի–շատակին նվիրված հուշարձանների (Ռուսաստան, Ուկրաինա): Հալեպում ստեղծել է (Լևոնի հետ) մի շարք գոր–ծեր [Հայոց ցեղասպանության 80–րդ տարելիցին նվիրված (1995), Մեսրոպ Մաշտոցի (1997) հուշարձանները ևն]: **Ռաֆիկ Մ.** (ծ. 1955), քանդ.: Հեղինակ է «Մեր Մկրտչյան» (1982) դիմաքանդա–կի (3–րդ կարգի դիպլոմ, Երևան, 2–րդ կարգի դիպլոմ, Լենինգրադ), «Պարույր Սևակ» (1985), «Տիրամայրը Քրիստոսի հետ» (1994, Ախալքալաքի Սբ Խաչ հայկ. եկեղեցու բակում) քանդակների:

ՄԿՐՏՉՅԱՆ Ալբերտ Մուշեղի (1937–2018), կինոռեժ.: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1987): ՀՀ ժող. արտիստ (2004): Պրոֆ. (1995–ից): Մեր ***Մկրտչյանի*** հայրը, Մեր ***Մկրտչյա–նի*** եղբայրը: 1962–66–ին՝ Հայկ. հեռուս–տաստուդիայի, 1971–ից՝ Հայֆիլմի ռեժ., 1995–99–ին՝ Գյումրիի դրամատիկ. (նաև տնօրեն), 2000–15–ին՝ Երևանի «Մեր Մկրտչյան» արտիստ. թատրոնների և գեղ. ղեկ.: Նկարահանել է «Հուշարձան» (1971, կարճամետրաժ), «Կյանքի լավագույն կե–սը» (1979), «Հին օրերի երգը» (1982), «Մեր մանկության տանգոն» (1985), «Ուրախ ավ–տոբուս» (2000) և այլ ֆիլմեր, բեմադրել Կ. Կոլդունովի «Երկու տիրոջ ծառան» (1995), Մ. Պանյոլի «Հացթուխի կինը» (2005), Գ. Մարկեսի «Սիրային նախատինք բազկա–թոռին նստած ամուսնուն» և այլ պիեսներ:

ՀՀ Պետ. (1981, 1985–ին՝ 2 անգամ, 2000), «Հայակ» հատուկ (2012) մրց–ներ, ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2007) շքա–նշան, «Մովսես Խորենացի» (2000), ՄՆ ոսկե (2007) մեդալներ:

ՄԿՐՏՉՅԱՆ Ալպիկ Ռաֆայելի (ծ. 1937), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1983), պրոֆ. (1986): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1986–ից): Հայտնաբերել է մյոսբաուեր. քվանտների մոդուլումը կո–հերենտ. ձայն. ալիքներով, անգստրեմի երկ–յան ալիքների և նեյտրոնների լրիվ վերամղումը, կիզակետումը և դրանց մի–ջոցով տեղեկույթի հաղորդումը, ուլտրա–ռելյատիվիստ. էլեկտրոնների կապու–ղավորման ժամանակ առաջացող կոշտ γ–քվանտների ուժեղացումը հիպերձայնի ազդեցությամբ: Քվազիչերենկովյան ճա–ռագայթման բնագավառում հայտնաբե–րել է նոր երևույթ, որը հնարավորություն է տալիս ստանալու ցանկացած բյուրեղ. ցանցի պատկերը («Ալպիգրամ»): Հայտ–նաբերել է արտաքին էլեկտրամագնիս. դաշտերի առկայությամբ ամորֆ նյու–թերում անցում. ճառագայթման երևույ–թը: Մշակել է կիսահաղորդիչ նյութերի ստացման եղանակ, որի հիման վրա ստեղծվել են իոնացնող ճառագայթների գերարագագործ գրանցիչներ:

ԽՍՀՄ ԳԱ Ի. Վ. Կուրչատովի անվ. մրց. (1984), «Պատվո նշան» և Լենինի, «Հայրենիքին մատուցած ծառայութուն–ների համար» 1–ին աստիճանի (2017) շքանշաններ, ՀՀ «Անանիա Շիրակացի» մեդալ (2003), ԵՊՀ (2005), ԿԳՆ ոսկե մեդալներ:

ՄԿՐՏՉՅԱՆ Ալֆրեդ Արմենակի (1935–2016), անոթ. վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1980), պրոֆ. (1994): Աշխ–ները վերաբե–րում են քրոնիկ. երակ. անբավարարութ–յան, սուր և քրոնիկ. զարկերակ. անան–ցանելիության վիրաբուժ. բուժմանը, որովայն. աորտայի և նրա ճյուղերի վե–րակառուցող. վիրահատություններին: ՀՀ վիրաբուժ. ԳԱ անդամ (1995–ից): ՀՀ երա–կարանների և անոթաբանների ընկ–յան նախագահ (2004–ից), ՀՀ վիրաբույժների ընկերակցության փոխնախագահ (1991):

ՀՀ «Մխիթար Հերացի» մեդալ (2005):

ՄԿՐՏՉՅԱՆ Աշոտ Ավետիքի (ծ. 1950), ճարտ.: Կազմել է (համահեղ.) Սևանի կենտրոնի հատակագիծը և № 4 միկ–րոշրջանի կառուցապատման նախագի–ծը (1980–88), Վանաձորի «Տարոն 1–3» բնակելի համալիրի (ԽՍՀՄ ճարտ–ների միության «Տարվա լավագույն նախագիծ» մրց.՝ 1990) հատակագիծը ևն: Համահե–ղինակ է Դիլիջանի հանգստյան տների համալիրի (1975), պանսիոնատի (1975), Կինեմատոգրաֆիստների ստեղծագործ. տան քոթեջների (1984), Գորիսում՝ բնա–կելի № 5 թաղամասի կառուցապատման (1975–86, «Բիենալե–85»–ի Մեծ մրց. և ոսկե մեդալ, Սոֆիա), Աբովյանում՝ ավտոկա–յանի (1980, ՀԼԿԵՄ մրց.՝ 1985): Հեղինակ է Երևանում և արտերկրում՝ մենատների, 4 վիլլայի (ԱՄՆ, 1995–2000), հյուրանո–ցի (Չինաստան) և այլ կառույցների (Նյու Յորք, Նյու Ջերսի ևն) նախագծերի:

ՄԿՐՏՉՅԱՆ Արարատ Եղիշի (ծ. 1953), առողջապ–յան կազմակերպիչ: Բժշկ. գիտ. դ–ր (2002): 1992–98–ին՝ ՀՀ ԱՆ փոխ–նախարար, 1998–2000–ին՝ ՀՀ Կառ–յանն առընթեր պետ. առողջապ–յան գործակա–լության պետ, 2000–ին՝ ՀՀ առողջապ–յան և սոցիալ. ապահովության, 2000–03–ին՝ ՀՀ ԱՆ նախարար: Աշխ–ները վերաբերում են սոցիալ., առողջապ–յան և բնության պահպանության հարցերին:

ՄԿՐՏՉՅԱՆ Արթուր Ասլանի (1959–1992), պետ–քաղ. գործիչ: ԼՂՀ ԳԽ 1-ին նախագահը: Պատմ. գիտ. թեկնածու (1988): Արցախյան շարժման կազմակերպիչներից: 1991–92-ին՝ Հադրութի ինքնապաշտպ. ջոկատի շտաբի պետ: Զգալի ներդրում ունի կամավոր. ջոկատների կազմավորման, ԼՂՀ պետականության և ՊԲ ստեղծման գործում: Սպանվել է իր բնակարանում՝ չպարզված հանգամանքներում:

ՄԿՐՏՉՅԱՆ Արմեն Յարդիկի (ծ. 1973), ըմբիշ: ԽՍՀՄ (1990), միջազգ. կարգի (1992) ս. վ.: Եվրոպայի չեմպիոն (1994), աշխարհի առաջնության բրոնզե (1995), օլիմպ. խաղերի արծաթե (1996) մեդալակիր:

ՄԿՐՏՉՅԱՆ Բորիս Միքայելի (1929–1999), հրապարակախոս, խմբ.: ՀՀ վաստ. ժուռնալիստ (1969): 1975–91-ին՝ *«Կոմունիստ»* (ռուս.) թերթի գլխ. խմբ.: 1961–75-ին՝ ռուս. «Իզվեստիա» և «Պրավդա» թերթերի սեփ. թղթ.: Հեղինակ է գիտահանրամատչելի վավերագր. կինոսցենարների:

ՄԿՐՏՉՅԱՆ Գագիկ Ալեքսանդրի (ծ. 1956), լրագրող, խմբ.: ՀՀ վաստ. լրագրող (2006): Մանկավարժ. գիտ. դ–ր (1991): 1997–ից՝ *«Հայոց աշխարհ»* օրաթերթի գլխ. խմբ.:

ՄԿՐՏՉՅԱՆ Գայանե Նշանի (ծ. 1952), դերասանուհի: ՀՀ վաստ. արտիստ (2012): 1969–93-ին՝ ԵՊՀԹ-ի, 1997-ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասանուհի: Հանդես է եկել նաև հեռուստա- և ռադիոթատրոններում: Նկարահանվել է «Վրիժառուն» ֆիլմում, հեռուստասերիալներում:

ՀԼԿԵՄ մրց-ի դափնեկիր (1983), ԽՍՀՄ Աշխ. արիության մեդալ:

ՄԿՐՏՉՅԱՆ Գրիգոր Լևոնի (1902–1948), նկարիչ: 1930-ին Ալեքսանդրիայում հիմնադրել է «Գրեգուար» նկարասրահը: 1947-ին հայրենադարձել է: Հեղինակ է ռեալիստ. բնանկարների, դիմանկարների («Կառնավալ», «Բնանկար ծառով», «Աղջիկը ընթերցելիս» ևն), որոնք աչքի են ընկնում թանձր երփնագրով, քնարականությամբ:

ՄԿՐՏՉՅԱՆ Գրիգոր Հմայակի (ծ. 1924), ռեժ.: ՀՀ վաստ. արտիստ (1956): Պրոֆ. (1985): 1953–82-ին՝ Լենինականի (1961–62 և 1977–82-ին՝ գլխ. ռեժ.) թատրոնների ռեժ. (Ա. Վ. Սուխովո-Կոբիլինի «Դատական գործ», 1968, Թ. Ուիլյամսի «Ապակե գազանանոց», 1978, Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», 1980, Ա. Ջ. Կրոնինի «Բրոուդիի ամրոցը», 1983, ևն): Պիեսներ է բեմադրել նաև հեռուստաթատրոնում (Զ. Պիրանդելլոյի «Մերկ կյանք», «Մահը»՝ ըստ Նար-Դոսի):

ՄԿՐՏՉՅԱՆ Գրիգոր Մկրտչի (1925–2003), մարզիկ, մարզիչ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1956), վ. մ. (1968): Տափօղակով հոկեյի օլիմպ.խաղերի (1956), աշխարհի և Եվրոպայի (1954–56), ԽՍՀՄ (1948–59) չեմպիոն: 1965–67-ին՝ գնդակով հոկեյի ԽՍՀՄ հավաքականի գլխ. մարզիչ: Նրա ղեկավարությամբ ԽՍՀՄ հավաքականը դարձել է աշխարհի եռակի չեմպիոն:

ՄԿՐՏՉՅԱՆ Դերենիկ Պետրոսի (1909–1983), ճարտարագետ-էլեկտրիկ: Արշավիր *Ղազարյանի* եղբայրը: Աշխ-ները վերաբերում են հատուկ էլեկտրատեխ. սարքավորումների (պտտող տրանսֆորմատորներ, սելսիններ, համաժամյա մեքենաներ, պտտաչափ. գեներատորներ ևն) մշակմանն ու կառուցմանը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1951), «Պատվո նշան», Աշխ. կարմիր դրոշի շքանշաններ:

ՄԿՐՏՉՅԱՆ Էդուարդ Սամսոնի (ծ. 1930), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ–ր (1999), պրոֆ. (2011): Հեղինակ է «Գրաբարի դասընթաց» (2008), «Հայոց լեզվի պատմության դասընթաց: Գրավոր ժամանակշրջան» (համահեղ., 2016) ձեռնարկների: Աշխարհաբարի է փոխադրել Եսայի Հասան-Ջալալյանցի «Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի» (2007) երկը:

ՄԿՐՏՉՅԱՆ Թաթուլ Մելսիկի (ծ. 1978), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (2017): Աշխ-ները վերաբերում են տնտ. անվտանգության, հարկաբյուջետ. քաղ-յան, տնտ. աճի որակի հարցերին:

ՄԿՐՏՉՅԱՆ Ժիրայր Արտաշեսի (1931–1998), հաշվող. տեխնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1987), պրոֆ. (1987): ՀՀ վաստ. գյուտարար (1977): Աշխ-ները վերաբերում են ԷՀՄ-ների էլեկտրասնուցման միջոցների նախագծման և կիրառության տեսությանը, փոխակերպիչ տեխնիկային, էլեկտրամագնիս. համատեղելիության հարցերին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1983):

ՄԿՐՏՉՅԱՆ Լյուդմիլա Խորենի (ծ. 1943), ճարտ.: Սաշուր *Քալաշյանի* կինը: 1970-ից՝ նախագծի գլխ. ճարտ. Հայնախագիծ ինստ-ում, 1981–88-ին՝ «Կումայրի» նախագծ. արվեստանոցի ղեկ., որտեղ մշակել են հուշարձան-շենքերի վերականգնման և վերակառուցման նախագծեր (Զիթողցյանների տուն, Ասլամազյան քույրերի պատկերասրահ ևն): Համահեղինակ է (Արթուր *Թարխանյանի* հետ) Երևանի Էրեբունի № 3 թաղամասի գլխ. հատակագծի, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստ-ի (Ս. Քալաշյանի հետ, 1994, ընդլայնված նախագիծը՝ 2012) նախագծերի:

ՄԿՐՏՉՅԱՆ Լևոն Հայկի (ծ. 1953), կինոռեժ., սցենարիստ, օպերատոր: Նկարահանել է «Գյումրի» (1987), «Չարենց: Հայտնի և անհայտ էջեր» (1987), «Պարետային ժամ» (1989), «Ազնավուր, Հայաստան» (1989), «Զորավար Անդրանիկ» (1990), «Մատյան անկախության» (2002), «Հովհաննես Շիրազ» (2005) և այլ վավերագր. ֆիլմեր, նաև Ղարաբաղյան շարժումը (1988–ից): 1993-ին մասնակցել է Քելբաջարի ազատագրմանը: 2002-ից՝ ԱՄՆ-ում. համագործակցել է CNN հեռուստաընկ-յան հետ:

ՄԿՐՏՉՅԱՆ Լևոն Մկրտչի (1933–2001), գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1971), պրոֆ. (1973): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996): Գիտ. վաստ. գործիչ (1981): 1998–2001-ին՝ ՀՌ(Ս)Հ հիմնադիր-ռեկտոր: Հեղինակ է «Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը» (1963), «Հայ պոեզիան և XIX–XX դարերի ռուս բանաստեղծները» (1968), «Պոեզիայի հասակը» (1979), «Բաց պատուհաններով տուներ» (1989, բոլորը՝ ռուս.) և այլ աշխ-ների, «Վիլյամ Սարոյանը մոտիկից» (1978) գր. դիմանկարի, «Քաղցր է լույսը» (1980) պատմվածքների, հուշերի, «...Իմանալ զբանս հանճարոյ» (1985) գրականագիտ. էսսեների ժող-ների և այլ գործերի: ՀՀ Պետ. մրց. (1983):

ՄԿՐՏՉՅԱՆ Լևոն Նիկիտի (ծ. 1938), ուռուցքաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1971), պրոֆ. (1972): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (1990): ՀՀ ԲԳԱ նախագահ (1987–ից): ՌԲԳԱ ակադ. (2005): 1977–99-ին՝ Ուռուցքաբանության գիտ. կենտրոնի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են չարորակ նորագոյացությունների կանխարգելման և բուժման հարցերին: Ստեղծել է բազմարժեք սաղմնային հակաուռուցք. պատվաստանյութ: ՀՀ բժշկ. գիտ. ընկ-ների խորհրդի նախագահ (1982–91):

ՄԿՐՏՉՅԱՆ Հարություն Գաբրիելի (1903–1992), գրող, գրականագետ, խմբ.: Բանասիր. գիտ. դ–ր (1975), պրոֆ. (1968): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1963): 1934–37-ին՝ ՀԳՄ 1-ին քարտուղար, 1930–32-ին՝ «Ռյա թազա», 1932 և 1935–36-ին՝ «Գրական թերթ», 1934–37 և 1947–50-ին՝ «Սովետական գրականություն», 1942–43-ին՝ «Մարտական դրոշ» պարբ-ների գլխ. խմբ.: Հեղինակ է «Անհայտ զինվորի հիշատակարանը» (գիրք 1–3, 1969–75), «Ջրջում» (1988) վեպերի, «Նովելներ և ակնարկներ» (1945), «Հայրենի երկրում» (1963), «Վերջին բարեկամը» (1990) և այլ արձակ գործերի ժող-ների, «Գրական դեմքեր» (1953), «Ակսել Բակունց» (1958), «Ստեփան Զորյան» (1977) և այլ աշխ-ների:

ՄԿՐՏՉՅԱՆ Հարություն Ենոքի (1931–2007), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1984), պրոֆ. (1985): Աշխ-ները վերաբերում են արտադր. միջոցների հանրային սեփականության, աշխ-ի կոոպերացիայի էության և դրսևորման ձևերի տես. ու մեթոդաբան. բնութագրման, արտադր-յան կառավարման համակարգի կատարելագործման հարցերին:

ՄԿՐՏՉՅԱՆ Հարություն Ռուբենի (1922–2002), ավազ սերժանտ: ԽՄ հերոս (1945): Հերոսի կոչման արժանացել է *Թամանյան դիվիզիայի* կազմում՝ Ղրիմի (մասնավորապես՝ Սևաստոպոլի) ազատագրման ժամանակ ցուցաբերած խիզախության համար:

ՄԿՐՏՉՅԱՆ Հովհաննես Հակոբի (ծ. 1950), նյարդակիբեռնետիկ: Կենսբ. գիտ. դ–ր (2000): Աշխ-ները վերաբերում են սինապսային փոխանցման նեյրոնի և նեյրոնային ցանցերի մոդելավորման, ԿՆՀ-ի պլաստիկության մեխանիզմների պարզաբանման, կենսաբժշկ. ազդանշանների վերլուծության համար թվային ալգորիթմների մշակման հարցերին:

ՄԿՐՏՉՅԱՆ Մարտիրոս, **Շիրազեցի** (Դավթյանց Մարտիրոս), XIX դ–ի 1-ին կեսի գրող, խմբ., գրաքննադատ: 1821–23-ին՝ *«Շտեմարան»* հանդեսի խմբ., որտեղ հրատարակել է իր բանաստեղծությունները (մեծ մասամբ՝ գրաբար), առակները: Հեղինակ է «Խտրադիմայ դժրողութեան...» («Հասարակախօսութիւն» հավելվածուսումնասիրությամբ), «Անաչառ բանտ» (երկուսն էլ՝ 1821) կատակերգությունների, «Վիկտորիայ» (1841) այբբենարանի, որը երկար տարիներ ուս. ձեռնարկ է եղել Կալկաթայի հայկ. դպրոցի համար:

ՄԿՐՏՉՅԱՆ Մկրտիչ Յոլակի (ծ. 1937), ճարտարագետ-տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1992), պրոֆ. (1997): Աշխ-ները վերաբերում են մեքենաշինության մեջ նյութ. պաշարների ծախսման, հեռանկար. չափորոշիչների կանխատեսման և կատարելագործման, շուկայական հարաբերություններում նյութ. պաշարների օգտագործման արդյունավետության, արդ. խնդիրներին:

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1986):

ՄԿՐՏՉՅԱՆ Մհեր Ալբերտի (ծ. 1972), ռեժ., սցենարիստ, դերասան: Ալբերտ *Մկրտչյանի* որդին: 2015-ից՝ «Մհեր Մկրտչյան» արտիստ. թատրոնի գեղ. ղեկ.: «Երեքը և ձյան փաթիլը» (2007), «Չափահաս աղջիկը կամ թեսթ ... վրա» (2010), «Պապ 005» (2013), «Պապ 005» (2015, հեռուստասերիալ, բո-

լորը՝ ՌԴ), «Կյանք ու կռիվ» (2016), «Կյանք ու կռիվ 2. 25 տարի անց» (2017) ֆիլմերի սցենարի հեղ. և ռեժ.: ՀՀ Պետ. մրց. (2017):

ՄԿՐՏՉՅԱՆ Միհեր (Ֆրունզիկ) Մուշեղի (1930–1993), դերասան: ՀԽՍՀ (1971), ՎԽՍՀ (1980), ԽՍՀՄ (1984) ժող. արտիստ: Ալբերտ ***Մկրտչյանի*** եղբայրը: 1947–53-ին՝ Լենինականի դրամատիկ., 1953–88-ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնների դերասան, 1988-ից՝ Վ. Աճեմյանի անվ. թատրոն-ստուդիայի (1992–93-ին՝ Արտիստ., 2004-ից՝ Մ. Մկրտչյանի անվ. արտիստ. թատրոն) գեղ. ղեկ. և տնօրեն: Դերերից են՝ Ղազար (Ժ. Հարությունյանի «Ղազարը գնում է պատերազմ»), Պաղտասար (Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար»), Սիրանո (Է. Ռոստանի «Սիրանո դը Բերժըրակ»), բեմադրել է Մ. Գորկու «Հատակում» (1980, նաև հեռուստաֆիլմ, Բարոն, 1986), Մ. Պանյոլի «Հացթուխի կինը» (1993, Հացթուխ): Նկարահանվել է կինոյում («Նվագախմբի տղաները», 1960, «Մենք ենք, մեր սարերը», 1969, «Հին օրերի երգը», 1982, բոլորը՝ Հայֆիլմ, «Միմինո», 1978, «Ունայնություն ունայնության», երկուսն էլ՝ Մոսֆիլմ, ևն): Մ–ի արվ–ին բնորոշ են կատակերգականի և ողբերգականի զուգակցումը, տպավորիչ հումորը, պարզ արտահայտչամիջոցները:

ԽՍՀՄ (1978), ՀԽՍՀ (1979) Պետ. մրցներ, ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան (2001, հետմահու):

ՄԿՐՏՉՅԱՆ Ներսես Ալեքսանի (ծ. 1928), լեզվաբան–արևելագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1995): Հեղինակ է «Բուրդուրի բարբառը» (1971), «Բառերի կենսագրություն»ից» (1996), «Սեմական լեզուները և հայերենը» (ռուս., 2005), «Անատոլիայի նորահայտ հայ բարբառները և բանահյուսությունը» (2006), «Հայերենից փոխառություններ թուրքերենի բարբառներում» (2007), «Պամիրյան լեզուները և հայերենը: Սկյութերեն բառապաշարը հայերենում» (2015) աշխ–ների:

ՄԿՐՏՉՅԱՆ Շահեն Հարությունի (1927–1995), անասնաբույժ: Գղտ. գիտ. դ–ր (1981), պրոֆ. (1982): Աշխ–ները վերաբերում են գղտ. կենդանիների բնական դիմադրողականության ձևավորման մեխանիզմների, իմունակենսբ. հակազդունակության տվյալներն ընտրասերման մեջ կիրառելու, ոչխարների սաղմի փոխպատվաստման և այլ խնդիրների:

ՄԿՐՏՉՅԱՆ Շահեն Մակիչի (ծ. 1936), մշակույթի գործիչ: 1965–72-ին՝ ԼՂԻՄ-ի պատմաերկրագիտ. թանգարանի տնօրեն, 1972–76-ին՝ ՀՊՊԹ փոխտնօրեն, 1976-ից՝ Ա. Սարգսյանի և Հ. Կոջոյանի տուն-թանգարանների տնօրեն: Հեղինակ է «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները» (1980, 1985), «Արցախի գանձերը» (պատկերագիրք, հայ., ռուս., անգլ., ֆրանս., 1997, հայ., ռուս.՝ 2000), «Շուշի. ողբերգական ճակատագրի քաղաք» (ռուս., 1997, անգլ.՝ 1999), «Լեռնային Ղարաբաղ. Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության անատոմիան» (հայ., ռուս., 2003, անգլ.՝ 2004) և այլ գրքերի:

ՄԿՐՏՉՅԱՆ Շողիկ Հովնանի (1911–2000), երգչուհի: Գուրգեն Լ. ***Միրզոյանի*** կինը: ՀՀ ժող. արտիստ (1954): 1937–72-ին՝ Հայֆիլհարմոնիայի ժող. գործիքների անսամբլի մեներգչուհի: Մասնակցել է հայ արվ–ի և գրկ–յան տասնօրյակներին Մոսկվայում (1939, 1956): Այսրկովկասի (1934) և ԽՍՀՄ (1936) ժողդ–ների ստեղծագործության ստուգատեսների 1–ին մրց–ներ:

ՄԿՐՏՉՅԱՆ (Սարգսյան) Ռաիսա Հրանտի (ծ. 1942), երգչուհի: ՀՀ ժող. արտիստ (2006): 1968–ից՝ Հեռուստառադիոպետկոմի էստրադ.-նվագախմբի մեներգչուհի: Երգացանկում՝ Կ. Օրբելյանի, Ա. Բաբաջանյանի, Ռ. Ամիրխանյանի, Ա. Հեքիմյանի և ուր. երգերից:

«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1–ին աստիճանի (2016), ՀՀ «Մովսես Խորենացի» (2001), «Կարոտ» միջազգ. փառատոնի ոսկե (2008, Մոսկվա), ՀՀ Ա.Ժ Պատվո (2011) մեդալներ:

ՄԿՐՏՉՅԱՆ Ռիանոս Սեդրակի (ծ. 1922), ագրոկլիմայագետ–էկոլոգ: Աշխարհագր. գիտ. դ–ր (1988), պրոֆ. (1990): Աշխ–ները վերաբերում են մշակաբույսերի տեղաբաշխման ագրոկլիմ. շրջանացման, լեռն. պայմաններում կլիմ. պաշարների ձևավորման ու գնահատման, ագրոկլիմ. և կլիմ. քարտեզագրության, լանդշաֆտների պլանավորման և գղտ–յան էկոլոգացման և այլ հարցեր: Համահեղինակ է «Հայաստանի ազգային ատլասի» (հ. 1, 2007):

ԽՍՀՄ Կարմիր աստղի (1943), ՀՄՊ 2–րդ աստիճանի (1944) շքանշաններ, ԽՍՀՄ ԺՏՆՑ–ի արծաթե և բրոնզե (1955–56), ՀՀ ՊՆ Ծովակալ Իսակովի անվ. մեդալ (1992):

ՄԿՐՏՉՅԱՆ Ռոբերտ Գուրգենի (1934–1994), կենսաֆիզիկոս: Բժշկ. գիտ. դ–ր (1970), պրոֆ.: 1977–83-ին՝ ***«Առողջապահություն»*** հանդեսի գլխ. խմբ.: Աշխ–ները վերաբերում են հյուսվածքների ճառագայթ. ախտահարման ու պրոտեոլիզի հարցերին:

ՄԿՐՏՉՅԱՆ Ռուբեն Լևոնի (ծ. 1955), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1990): 1992–2001-ին՝ ԵՖԻ–ի տնօրեն: Աշխ–ները վերաբերում են տրամաչափ. դաշտերի (լարերի և գերլարերի) տեսությանը, գերհամաչափությանը, գերձգողությանը: Հետազոտել է Տիեզերքի Հարթլի–Հոքինգի ալիք. ֆունկցիայի տեղագր. հատկությունները, գերհամաչափության, գերլարերի և M–տեսության հանրահաշվի պատկերացումները:

ՄԿՐՏՉՅԱՆ Սամվել Հենրիկի (1959–2014), գրող, թարգմանիչ: Հեղինակ է բանաստեղծությունների, պատմվածքների («IMAGINE…», 2004): 2002–ից՝ ***«Արտաահմանյան գրականություն»*** հանդեսի հիմնադիր–խմբ.: Անգլ–ից հայ. է թարգմանել Ու. Ֆոլքների «Աբիսողո՞մ, Աբիսողո՞մ» (2001), Վ. Շեքսպիրի «Սոնետներ» (2004), Ջ. Ջոյսի «Ուլիսես» (2012), Թ. Ս. Էլիոթի «Բանաստեղծություններ» (2014), հայ–ից անգլ.՝ «Հայ բանաստեղծների ընտրանի» (1991), Շ. Տաճապետյանի «Ընտիր բանաստեղծություններ» (1999), «Արևելահայ արդի բանաստեղծություններ» (2004) և այլ երկեր:

ՀԳՄ և ՀԱԵ «Կանթեղ» մրց., ՀՀ ՄՆ «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալ:

ՄԿՐՏՉՅԱՆ Սամվել Սողոմոնի (1901–1951), դերասան: Հայկ. կինոյի սկզբնավորողներից: Կինոդերերից են՝ Սեյրան («Նամուս», 1925), Մուրադ («Չար ոգի», 1928), Դանիել–յան («Լեռնային արշավ», 1939), Դաստառու («Քաջ Նազար», 1940) ևն:

ՄԿՐՏՉՅԱՆ Սենեքերիմ Ալեքսանի (1908–1973), համաճարակաբան: Բժշկ. գիտ. թեկ–նածու (1952): ՀԽՍՀ վաստ. բժիշկ (1961): 1941-ին Արտո ***Ալեքսանյանի*** հետ ստեղծել է Հանրապետ. հակաժանտախտ. կայանը և մինչև 1973-ը ղեկավարել այն: Աշխ–ները վերաբերում են հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի կազմակերպման հարցերին: Մ–ի անունով է կոչվել (1994-ից) ՀՀ ԱՆ հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման կենտրոնը:

ՄԿՐՏՉՅԱՆ Սենիկ Հովհաննեսի (1935–2012), հաշվող. տեխնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1976), պրոֆ. (1978): ՀՃԱ (1994), ՄՃԱ (1997) անդամ: ՀՀ վաստ. գյուտարար (1996): Աշակել է նեյտրոնային տրամաբ. տարրերի տեսության և կիրառության խնդիրներ, մշակել է և արտադր–յան մեջ ներդրել էլեկտրոն. սարքերի ստեղծման արդյունավետ տեխնոլոգիա, մասնագիտացված հիբրիդ. ինտեգրալ միկրոսխեմաներ:

ՀՀ «Անանիա Շիրակացի» մեդալ (2004):

ՄԿՐՏՉՅԱՆ Սերգեյ Սեդրակի (1911–1974), երկրաբան: Երկրբ–ինքբ. գիտ. դ–ր (1953), պրոֆ. (1955): ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1956, ակադ. քարտուղար՝ 1961–67, փոխնախագահ՝ 1967–71-ին): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): Եղել է ՀԽՍՀ ԳԱ երկրբ. ինստ-ի տնօրեն (1971–74): Աշխ–ները վերաբերում են օգտ. հանածոների առաջացման ու տեղաբաշխման օրինաչափություններին, մագմատիզմի և երկրբ–յան պատմության հարցերին: «Հայկական ՍՍՀ երկրաբանություն» (ռուս., հ. 1–10, 1962–74) հրտ–յան գլխ. խմբ.):

ԽՍՀՄ Պետ. մրց. (1950), Լենինի և այլ շքանշաններ:

ՄԿՐՏՉՅԱՆ Վահագն Արշակի (ծ. 1925), գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1983), պրոֆ. (1985): ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1985): 1972–74-ին՝ «Հայաստան» հրտչ–յան տնօրեն: 1996-ից՝ ԱՄՆ-ում: Հեղինակ է «Շիրազի պոեզիայի պոետիկան» (1958), «Գրողը աշխարհի արձագանքն է» (1968), «Արվեստի ճշմարտություն և կյանքի ճշմարտություն» (1986), «Համո Սահյանի բանաստեղծական բնափիլիսոփայությունը» (1989) և այլ աշխ–ների:

ՄԿՐՏՉՅԱՆ Վարդան Սուրենի (ծ. 1950), ինքնաշխատ կառավարման բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1990), պրոֆ. (1994): ՌԴ վաստ. գյուտարար: Աշխ–ները վերաբերում են էներգատար ջերմ. շարժընթացների ինքնաշխատ կառավարմանը, միկրոպրոցեսոր. տեխ. և ծրագր. միջոցների ստեղծմանը:

ՀԼԿԵՄ (1960), ԽՍՀՄ երիտասարդ գյուտարարների համամիութ. (1979) մրց–ներ:

ՄԿՐՏՉՅԱՆ Վիլիս Անդրանիկի (ծ. 1937), իմունաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1985), պրոֆ. (1986): Առաջարկել է սրտի իշեմիկ հիվանդության, սրտային անբավարարության, ռևմատիզմի, մարսող., ներզատ., վերարտադրող. համակարգերի որոշ հիվանդությունների բուժման մեթոդներ:

ՄԿՐՏՉՅԱՆ Տատյանա Ալեքսանդրի (ծ. 1948), կենսաքիմիկոս: Տեխ. գիտ. դ–ր (2003): Աշխ–ները վերաբերում են խաղողագործության և պտղաբուծության առանձին հարցերի:

ՄԿՐՏՉՅԱՆ Ֆերդինանդ Անուշավանի (ծ. 1947), բարդ տեղեկատվ. համակարգերի բնագավառի գիտնական: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1988), պրոֆ. (1996): 1997-ից՝ ՌԲՆԳԱ էկոտեղեկագիտ–յան հիմնահարցերի ինստ–ի տնօրեն: Աշխ–ները վերաբերում են Երկրի մակերևույթի վրա կատարվող երևույթների հայտնաբերման

խնդիրներում տեղեկատվ. մեթոդների, հեռակառավարման և հպում. փորձարար. հետազոտությունների տվյալների վիճակագրության մշակման ալգորիթմ. և ծրագր. ապահովման հարցերին: Զարգացրել է ԷՀՄ-ների վիճակագր. լուծումներն ընդունելու ուսուցման տեսությունը, ապացուցել խանգարումակայունության դեպքում հարատևության սահման. օրենքը: ՌԲՆԳԱ թղթ. անդամ (1997):

ՌԳԱ Պ. Լ. Կապիցայի (1995), Պետրոս I-ի (1996), Վ. Ի. Վեռնադսկու (2001) անվ. արծաթե մեդալներ:

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ (հուն. – ընկղմում, սուզում), եկեղեցի մտնելու քրիստ. խորհուրդ, որ հաստատել է *Հիսուս Քրիստոսը*: Կատարում է քին-ն՝ մկրտվողի լվացմամբ (ջրում ընկղմելով կամ ջրցողելով): Մ. կատարվում է մեկ անգամ և մարդուն մեկընդմիշտ դնում է Աստծու հետ նոր հարաբերությունների մեջ, անկրկնելի է: Միակ եկեղեց. խորհուրդն է, որ կարող է կատարել նաև (բացառիկ դեպքում) աշխարհականը:

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ ՏԻՐՈՋ, քրիստոնեության գլխ. տոներից, սահմանվել է *Հովհաննես Մկրտչի* ձեռամբ Հորդանան գետում *Հիսուս Քրիստոսի* մկրտության պատվին: Այդ ժամանակ, ըստ Ավետարանի, Քրիստոսի վրա իջել է Սբ Հոգին՝ աղավնու տեսքով (այստեղից՝ Աստվածհայտնություն): Նշվում է հունվ. 6-ին՝ Տիրոջ ծննդյան տոնի հետ: Տես նաև *Ապրվածհայտնություն* և *Սուրբ Ծնունդ*:

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ Անահիտ Աղաբեկի (1904–1970), դերասանուհի: ՀԽՍՀ ժող. արտիստ (1967): 1933-ից (ընդհատումով)՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասանուհի (Նատալյա՝ Գ. Սունդուկյանի «Խաթաբալա», Մելանյա՝ Մ. Գորկու «Եգոր Բուլըչովը և ուրիշներ», Դիանա Միխայլովնա՝ Վ. Պ. Մինկոյի «Առանց անունները տալու», Աննա Անդրեևնա՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», ևն):

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ Աշոտ Սուսյելի (ծ. 1946), ներզատաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1999), պրոֆ. (2000): Աշխ-ները վերաբերում են նյարդաներզատաբանության, շաքարախտի, հարվահանագեղձի հիվանդություններին:

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ Եվգենիա Էմանուելի (1948–2016), դերասանուհի: 1972-ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասանուհի: Նկարահանվել է «Երեք ընկեր», «Եթե բոլորը», «Շնորհակալություն, հայրիկ», «Սիրո գործակից» և այլ ֆիլմերում, հեռուստասերիալներում:

«Հայակ» մրց. (2013, Ազգ. կինոյի զարգացման հիմնադրամ):

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ Մելս Պարգևի (ծ. 1950), մարզ. հոգեբան: Հոգեբ. գիտ. դ-ր (2004), պրոֆ. (2005): Աշխ-ները վերաբերում են անձի հոգեվիճակի, կամային դրսևորումների, ինքնակառավարման, արտակարգ պայմաններում անձի հոգեբ. հարմարման խնդիրներին:

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ (Մկրտումով) Սամսոն Մովսեսի (1910–1943), ավիացիայի կապիտան: ԽՄ հերոս (1942): Մասնակցել է Խորհրդա-ֆինն. (1939–40) պատերազմին և ՀՄՊ-ին: Հերոսի կոչման արժանացել է Վլադիկավկազի շրջանի օդ. մարտերում ցուցաբերած խիզախության համար:

ՄԿՈՒՆԴ, **մեծ գեղարդ, մեծ նիզակ, տեզ**, զենքի ինագույն տեսակ միջնադար. Հայաստանում: Պատրաստվել են քարե, ապա՝ պղնձե, բրոնզե, երկաթե շեղբերով, որոնք ամրացվել են փայտե կոթերին: Մ. կրող զինվորները կոչվել են մկնդավորներ:

ՄՀԵՐ, վիպական-առասպել. հերոս, *«Սասնա ծռեր»*-ի գլխ. հերոսներից: Հանդես է գալիս պապի (Մեծ, Առյուծաձև Մ.) և թոռան (Փոքր Մ.) կերպարներով: Նրանց անունով են կոչվում էպոսի 2-րդ և 4-րդ ճյուղերը: Մ. գրկ-յան մեջ և արվ-ում ըմբոստ մաքառումների, ազգ. ու սոցիալ. իրկություն երազողի մարմնավորումն է:

«ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆ» ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ, հիմնադրվել է 1986-ին Երևանում՝ Մհեր *Մկրտչյանի* (գեղ. ղեկ.) նախաձեռնությամբ՝ որպես թատրոն-ստուդիա (2000-ից՝ Մ. Մկրտչյանի անվ., 2004-ից՝ «Մ. Մ.» ա. թ.): 1994–2000-ին չի գործել, վերաբացվել է 2000-ին (գեղ. ղեկ.՝ Ալբերտ *Մկրտչյան*), 2015-ից գեղ. ղեկ.՝ Մ. Ա. Մկրտչյան: Բեմադրվել են Մ. Պանյոլի «Հացթուխի կինը», Վ. Սարոյանի «Քո կյանքի ժամերը», Լ. Շանթի «Կայսր», «Ձախորդ Փանոսի կտակը» (ըստ Հ. Թումանյանի), Գ. Մարկեսի «Սիրային նախատինք բազկաթոռին նստած ամուսնուն» և այլ գործեր:

«ՄՀԵՐԻ ԴՈՒԽՌ», **«Ագռավու քար»**, սրբազան քարաժայռ: Ըստ ավանդության՝ այստեղ է փակվել աշխարհի անարդություններից խռոված *«Սասնա ծռեր»*-ի վերջին հերոսը՝ Փոքր Մհերը: Ապագայում նա դուրս է գալու այնտեղից, ազատելու է Հայոց աշխարհը չար ուժերից և հիմնադրելու է երջանիկ թագավորություն:

ՄՀԵՐՅԱՆ Եփրեմ (Էդիկ) Ռաֆիկի (ծ. 1954), անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (2003): Աշխ-ները վերաբերում են ՀՀ բուժհիմնարկներում ինտենսիվ բուժման և վերակենդանացման կազմակերպման ու հետագա կատարելագործման հարցերին: ՌԲՆԳԱ ՀՄ անդամ և պատվ. պրոֆ. (2000):

ՄՂԱՄՈՒՃ (Viscum), փոկածաղկազգիների ընտանիքի կիսամակաբույծ մշտադալար բազմամյա սոխուկավոր խոտաբույսերի կամ թփերի ցեղ: Հայտնի է մոտ 100 տեսակ, հիմնականում՝ արևադարձ. և մերձարևադարձ. շրջաններում, ՀՀ-ում՝ 1՝ գրեթե բոլոր անտառներում: Մակաբուծում է ասեղնատերև ծառերի տերևներում:

ՄՂԵՔՐՈՎ (Սիեբրյան) Ալեքսանդր Աբելի (1884–1966), թատեր. գործիչ, դերասան, ռեժ.: 1907–31-ին՝ Մոսկվայի Գեղ., Վ. Ֆ. Կոմիսարժևսկայայի, Ն. Ն. Եվրեինովի «Հինավուրց», ՌԽՖՍՀ 1-ին, 1939–56-ին՝ Լենինգրադի Ա. Ս. Պուշկինի անվ. դրամատիկ., 1963-ից՝ Ժող. թատրոններում (Ֆեոդոր՝ Ա. Ն. Տոլստոյի, «Ֆեոդոր Իվանովիչ արքան», Դունկան՝ Վ. Շեքսպիրի «Մակբեթ», ևն): Հեղինակ է «Կյանքս թատրոնում» (ռուս., հ. 1, 2, 1929, 1932) գրքի:

ՄՂՈՆ, երկ-յան միավոր ոչ մետր. համակարգում. օգտագործվում է հիմնականում ծով. գործում. 1 միջազգ. ծով. Մ. = 1,852 *կմ*, Մեծ Բրիտանիայում՝ 1 միջազգ. ծով. Մ. = 1,853 *կմ*: Ցամաք. (կանոնադր.) Մ. =1,609 *կմ* (Անգլիա, ԱՄՆ):

ՄՃԵԴԼՈՎ Միխայիլ (Միհրան) Պետրոսի (1928–2007), փիլ.: Փիլ. գիտ. դ-ր (1968), պրոֆ. (1972): ՌԴ գիտ. վաստ. գործիչ (1978): Աշխ-ները վերաբերում են քաղաքակրթության տեսության, արդի փիլ. ուղղությունների և սոցիոլոգիայի, կրոնի և արդիականության խնդիրներին («Քաղաքականություն և կրոն», ռուս., 1987, ևն):

ՄՅԱԳԿՈՎ Անդրեյ Վասիլևիչ (ծ. 1938), ռուս. դերասան: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1986): 1965-ից՝ Մոսկվայի «Սովրեմեննիկ» թատրոնի, 1977-ից՝ ՄԳԱԹ-ի դերասան (Բարոն՝ Մ. Գորկու «Հատակում», Տրեպլյով, Վոյնիցկի, Կուլիգին՝ Ա. Պ. Չեխովի «Ճայ», «Քեռի Վանյա», «Երեք քույր», ևն): Նկարահանվել է «Կարամազով եղբայրներ», «Գարաժ», «Ծառայողական սիրավեպ», «Դաժան ռոմանս», «Վերջաբան», «Ճակատագրի հեգնանք կամ Բաղնիքդ անուշ», «Ճակատագրի հեգնանք: Շարունակություն» (հեռուստաֆիլմ) և այլ կինոնկարներում: ԽՍՀՄ (1977), ՌԽՖՍՀ (1979) Պետ. մրց-ներ:

ՄՅԱԼԿ (Mälk) Ավգուստ (1900–1979), էստոնացի գրող: 1944-ից՝ վտարանդի: Հեղինակ է «Երկնայինի հովանու ներքո» (1937), «Խաղաղ նավահանգիստ» (1942), «Գարնանային հող» (1965) վեպերի:

ՄՅԱՆՄԱ (Myanma), **Մյանմայի Միության Հանրապետություն** (մինչև 1989-ը՝ Բիրմա), պետություն Հվ-արլ. Ասիայում, Հնդկաչին թերակղզու հս-արմ-ում: Սահմանակից է Հնդկաստանին, Չինաստանին, Լաոսին, Թաիլանդին և Բանգլադեշին: Տարածքը՝ 678,5 հզ. *կմ*², բն.՝ 55,1 մլն (2013): Մայրաքաղաքը՝ *Նայպիդո*: Պետ. լեզուն՝ բիրմաներեն: Կառավարման ձևը՝ խառը հանրապետ.: Պետության գլուխը Խաղաղության և զարգացման պետխորհրդի նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ Միության ասամբլեան: Բաժանված է 7 վարչ. և 7 ազգ. մարզերի: Հավատացյալների մեծ մասը բուդդայական է: Անդամակցում է ՄԱԿ-ին, ԱՍԵԱՆ-ին ևն: Տնտ-յան հիմքը գյուղ-յունն է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 1,2 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է գազ, անտառանյութ, ձուկ, բրինձ, արհեստագործ. և թանկարժեք քարեր ևն, ներմուծում՝ նավթ և նավթամթերք, մեքենաներ և սարքավորումներ, սննդամթերք, քիմիկատներ, դեղեր ևն: Դրամ. միավորը՝ քյատ:

Մ. թ. ա. II և I հազարամյակների սահմանագլխին Մ. են թափանցել թաի ժողովրդի խմբերը, մ. թ. սկզբին՝ շաներն ու այլ ցեղեր և Մ-ի մերձափնյա շրջաններում երևան են եկել 1-ին պետ. միավորումները, որտեղ տարածված էր բուդդայականությունն ու բրահմայականությունը: I–XI դդ-ում Մ-ի տարածքում եղել են Շրիկշետրա, Արական, մոների պետությունները: Բուն մյանմաներն իրենց Պագան պետությունը ստեղծել են XI դ-ում: XIII–XVIII դդ-ում Ավա, Պեգու, Տաունգու պետությունները պայքարել են Մ-ի տարածքն իրենց իշխանություն ներքո միավորելու համար: XVIII դ-ի կեսերին ստեղծվել է կենտրոնացված պետություն, որը խոշորագույններից էր տարածաշրջանում: Անգլո-բիրմ. պատերազմի արդյունքում Մ. նվաճել են անգլիացիները: 1886–1937-ին եղել է Բրիտ. Հնդկաստանի կազմում, հետագայում դարձել է ինքնուրույն գաղութ: 1930-ական թթ-ին ուժեղացել է ազգ. շարժումը: 1941–45-ին Մ. գրավել են ճապոն. զորքերը: 1948-ից անկախ պետություն է: Վարչապետ Ու Նուի (1948–56, 1957–58, 1960–62) կառ-յունը փորձել է կառուցել սոցիալիստ. հասարակարգ՝ բուդդայականության հիմքի վրա (1961-ին բուդդայականությունը հայտարարվել է պետ. կրոն): 1962-ին Ու Նուն հեռացվել է պաշտոնից, իշխանության է եկել Նե Վինուն, որը հենվել է Բիրմայի սոցիալիստ.

ծրագիր կուս-յան (հիմադրվել է 1962-ին, 1988-ից՝ Ազգ. միասնության կուս-յուն) և բանակի վրա: 1989-ից ունի ժամանակակից անվանումը: 1992-ից իշխանության ղեկին Մ-ի խաղաղության և զարգացման կուս-յունն է՝ գլխ. Տան Շվեի գլխավորությամբ: 2003-ին Մ-ի ղեկավարությունը հայտարարել է երկրում մասշտաբային քաղ. վերփոխումների ծրագրի մասին, որը նախատեսում էր անցնել կառավարման քաղաքաց. ժողովրդավար. ձևին: 2008-ին անցկացվել է սահմանադրության նախագծի վերաբերյալ հանրաքվե: 2010-ին երկրում անցկացվել են 1-ին խորհրդարան. բազմակուսակց. ընտրությունները: 2011-ին Տան Շվենին փոխարինել է գլխ. Տեյն Սեյնին:

Մ-ի առևտր. որոշ քաղաքներում հայեր եղել են դեռևս XVI դ-ի 1-ին կեսին: XVIII դ-ի 2-րդ կեսին համայնքն աշխուժացել է Հնդկաստանից ու Նոր Ջուղայից եկած հայերի հաշվին: 1875-ին մայրաքաղաք Մանդալայում հայերին ձրի հողատարածք է հատկացվել՝ եկեղեցի և բնակարաններ կառուցելու համար: 1920-ական թթ-ին հայերի թիվն ավելացել է Իրանից և Հնդկաստանից եկած հայերի հաշվին. միայն Ռանգունում այն անցել է 400-ից: XIX դ-ի սկզբին կառուցվել է Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին (այրվել է 1850-ին բռնկած հրդեհից, վերակառուցվել 1862 թ-ին), որը կանգուն է ցայսօր: 1917-ին Ռանգունում հիմնադրվել է հայկ. ակումբ, 1918-ին՝ Հայ տիկնանց միությունը, այնուհետև՝ ՀԲԸՄ-ի Մ-ի մասնաճյուղը, իսկ 1935-ին ստեղծվել է Բիրմայի հայ բարեգործ. ընկ-ը, ապա՝ կրթ., մարզ. և այլ կազմ-յուններ, հրատարակվել է «Հառաջ» անվգ. թերթը: Մ-ի անկախացումից հետո հայերը արտագաղթել են: Ներկայում Մ-ում բնակվում են շուրջ 150 հայեր: Դիվանագիտ. հարաբերություններ ՀՀ և Մ-ի միջև հաստատվել են 2013-ին:

ՄՅԱՈՆԵՐ, մեռներ (ինքնանվանումը՝ հմոնգ), մյո-յո խմբի ժողտ Չինաստանի հվ-ում (8,9 մլն, 2000), Վիետնամի հս-ում (787,6 հզ., 1999), Լաոսում (460 հզ.), Թաիլանդում (151,1 հզ., 2002) ևն: Լեզուն՝ մյո: Հավատացյալները հիմնականում պահպանել են ավանդ. հավատալիքները:

ՄՅԱՍԻՇՉԵՎ Վլադիմիր Միխայլովիչ (1902–1978), ռուս ավիակոնստրուկտոր: ԽՍՀՄ գեն-մայոր-ճարտարագետ (1944): Տեխ. գիտ. դ-ր (1955): Սոց. աշխ. հերոս (1957): Մ-ի ղեկավարությամբ ստեղծվել են ռմբակոծիչ և փոխադր. ինքնաթիռներ: Լենինյան մրց. (1957):

ՄՅԱՍԿՈՎՄԿԻ Նիկոլայ Յակովլևիչ (1881–1950), ռուս կոմպոզիտոր, մանկավարժ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1926): ԽՍՀՄ ժող. արտիստ (1946): Արվեստաբանության դ-ր (1940): Մ-ին աշակերտել են նաև Ա. Խաչատրյանը, Գ. Եղիազարյանը: Հեղինակ է սիմֆոնիաների, սիմֆոնիետների, սիմֆ. պոեմների և նախերգանքների, ջութակի և թավջութակի կոնցերտների, լար. կվարտետների, սոնատների, ռոմանսների, խմբերգերի և այլ գործերի:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1946-ին՝ կրկնակի, 1950, 1951, հետմահու):

ՄՅԱՄՆԻԿՅԱՆ, Մյասնիկով, Ալեքսանդր Ֆեոդորի (Աստվածատուրի), **Ալ. Մարտունի** (1886–1925), խորհրդ. կուս-պետ. և ռազմ. գործիչ, գրականագետ: Հոկտ. հեղյունից (1917) հետո հրամ. բարձր պաշտոններ է վարել Կարմիր բանակում: Ընտրվել է Բելոռուսիայի կոմկուսի ԿԿ Կենտր. բյուրոյի, ապա՝ ԲՍԽՀ ԿԳԿ նախագահ, ՌԿ(բ)Կ Մոսկվայի քաղաք. և մարզ. կոմիտեների քարտուղար: 1921-ի մարտին նշանակվել է ՀՍԽՀ ԺԿԽ նախագահ և ռազմ. գործերի ժողկոմ: 1922-ի մարտից ԱՍԽՖՀ գործկոմի նախագահներից էր, ապա՝ ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի 1-ին քարտուղարը: 1921-ի հուլիսի 4–5-ին մասնակցել է ՌԿ(բ)Կ ԿԿ կովբյուրոյի նիստին. դեմ է քվեարկել Լ.Ղ.-ն Ադրբ. ՍԽՀ կազմի մեջ մտցնելու մասին որոշմանը: Զոհվել է Թիֆլիսի օդանավակայանում՝ ինքնաթիռի վթարից: Մ-ի աշխ-ները լույս են տեսել առանձին ժող-ով («Երկեր», հ. 1–4, 1984–86):

ՄՅԱՄՆԻԿՈՎ Ալեքսանդր Լեոնիդովիչ (1899–1965), ռուս թերապևտ, գիտ. դպրոցի հիմնադիր: ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1948): ԲԳԱ թերապիայի ինստ-ի (1967-ից՝ Մ-ի անվ. սրտաբանության ինստ.) տնօրեն (1948-ից): Աշխ-ները վերաբերում են սիրտանոթ. ախտաբանությանը, լյարդի հիվանդություններին:

«Ռևկե ստեթոսկոպ» միջազգ. մրց. (1964):


ՄՅԱՍՆԵԴՈՎ Բորիս Ֆեոդորովիչ (ծ. 1930), ռուս քիմիկոս: ՌԳԱ ակադ. (1994): Ն. Ֆ. *Մյասնեդովի* եղբայրը: Աշխ-ները վերաբերում են ճառագայթաակտիվ տարրերի ֆիզքիմ. հատկություններին, դրանց անջատման և մաքրման եղանակներին, ճառագայթաքիմ. արտադր-յուն-ների վերահսկմանը, շրջակա միջավայրում ճառագայթաակտիվ նուկլիդների մշտադիտարկմանը:

ԽՍՀՄ Պետ. (1986), ՌԴ Կառ-յան (2002, 2007) մրց-ներ:

ՄՅԱՍՆԵԴՈՎ Նիկոլայ Ֆեոդորովիչ (ծ. 1936), կենսաօրգ. քիմիայի և կենսատեխնոլոգիայի բնագավառի գիտնական: ՌԳԱ ակադ. (2003, թղթ. անդամ՝ 1997-ից): ՌԴ վաստ. գյուտարար (1990): Բ. Ֆ. *Մյասնեդովի* եղբայրը: Աշխ-ները վերաբերում են կենսատեխնոլոգ. շարժընթացների մոլ-գենետիկ. խնդիրներին:

ԽՍՀՄ Պետ. (1983), ՌԴ Կառ-յան (2001) և ՌԳԱ Յ. Ա. Օվչիննիկովի անվ. (2015) մրց-ներ:

ՄՅՈԲԻՈՒՍ (Möbius) Ավգուստ Ֆերդինանդ (1790–1868), գերմանացի մաթեմատիկոս: Աշխ-ները վերաբերում են երկրչփ-յան առանձին հարցերի: Ապացուցել է միակողմանի մակերևույթների գոյությունը (**Մ-ի թերթ**), որն ստացվում է ABA′B′ ուղղանկյան (նկ. ա) AB և A′B′ 2 հակադիր կողմերն իրար այնպես սոսնձելով, որ A և B կետերը համընկնեն B′ և A′-ի հետ (նկ. բ):



Մյոբիուսի թերթի կառուցումը. ա. ABA′B′ սկզբնական ուղղանկյունը, բ. Մյոբիուսի թերթը

ՄՅՈՂԴ (Mjeda) Նդրե (1866–1937), ալբան բանաստեղծ: Հեղինակ է «Սոխակի լացը» (1887), «Ազատություն» (1901–11, հրտ.՝ 1937), «Լիսուս» (1921) պոեմների, «Յուվենալիա» (1917) քնար. ժող-ի:

ՄՅՈՍԲԱՈՒԵՐ (Mössbauer) Ռուդոլֆ Լյուդվիգ (1929–2011), գերմանացի ֆիզիկոս: ՌԳԱ արտ. անդամ (1982): Աշխ-ները վերաբերում են միջուկ., պինդ մարմնի, նեյտրինոյի ֆիզիկային: Հայտնաբերել է իր անվամբ կոչված *Մյոսբաուերի էֆեկտը*: Նոբելյան մրց. (1961):

ՄՅՈՍԲԱՈՒԵՐԻ ԷՖԵԿՏ (միջուկ. գամմա-ռեզոնանս, ՄԳՌ), ատոմ. միջուկների γ-քվանտների ռեզոնանս. առաքում կամ կլանում պինդ մարմնում՝ պայմանավորված մարմնի տատանող էներգիայի փոփոխություններով չուղեկցվող միջուկ. անցումներով: Դիտվում է γ-քվանտի փոքր էներգիայի դեպքում: Հայտնաբերել է Ռ. Լ. *Մյոսբաուերը* 1958-ին: ՄԳՌ-ի սպեկտրը տեղեկություններ է հաղորդում նյութի կառուցվածքի մասին, որի միջուկները կլանում են γ-քվանտները: Օգտագործում են ֆիզիկայում (պինդ մարմինների կառուցվածքի ուսումնասիրություններ), քիմիայում, կենսբ-յան, բժշկության մեջ և այլուր:

ՄՅՈՒՀԱՄ (Mühsam) Էրիխ (1878–1934), գերմանացի գրող: Հեղինակ է «Այրվող հող» (1920), «Հեղափոխություն» (1925) բանաստեղծությունների ժող-ների, «Անուններ և մարդիկ» (հրտ.՝ 1949) հուշագրության: «Եղանակ բոլորի համար» (1930) պիես-պամֆլետում ներկայացրել է նացիոնալ-սոցիալիստների և սոցիալ-դեմոկրատների առաջնորդների կերպարներ: Սահացել է համակենտրոնացման ճամբարում:

ՄՅՈՒԶԻՔԼ (անգլ.՝ musical), երաժշտբեմ. ստեղծագործություն, որտեղ օգտագործվում են էստրադ. և կենցաղ. երաժշտության, պարարվ-ի և օպեր. արվ-ի արտահայտչամիջոցներ: Զևավորվել է ԱՄՆ-ում 1920–30-ական, ծաղկել է 1940–70-ական թթ-ին (Կ. Պորտեր, Ֆ. Լոու, Լ. Բեռնսթայն, Լ. Բարտ և ուր.): Հայ կոմպոզիտորներից Մ-ներ գրել է Ռոբերտ Ամիրխանյանը՝ «Ատամնաբույժն արևելյան» (ըստ Հ. Պարոնյանի, 1976) և մանկ. «Դինգ-դոնգ» (1979):

ՄՅՈՒԼԵՐ (Müller) Կառլ Ալեքսանդեր (ծ. 1927), շվեյցարացի ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են կառուցվածք. ֆազ. (մասնավորապես՝ սեգնետոէլ.) անցումներին, ԷՊՌ մեթոդների կիրառմանը: Փորձերով հայտնաբերել է բարձրջերմաստիճան. գերհաղորդականությունը: Նոբելյան մրց. (1987, Յ. Գ. *Բեդնորցի* հետ):

ՄՅՈՒԼԵՐ Հայներ (1929–1995), գերմանացի դրամատուրգ, ռեժ.: Գեղարվ-ի ակադ-ի նախագահ Արլ. Բեռլինում (1990), «Բեռլիներ անսամբլ»-ի (1995) գեղ. ղեկ.: Հեղինակ է «Կառույց» (1965), «Գերմանիա: Մահ Բեռլինում» (1971) պիեսների դաս. սյուժեների մշակումների («Հերակլես 5», «Համլետ մեքենան», «Անատոմիա Տիտուս...», 1984), նաև «Վոլոկոլամսկի խճուղի» (1984–86) պիեսների շարքի, բանաստեղծությունների:

ՄՅՈՒԼԵՐ Հերտա (ծ. 1953), գերմանացի գրող: Բռնակալ. իշխանապետության պայմաններում մարդու ողջ մնալու, սոցիալ. բռնության և հարկադրանքի թեմաներն է արծարծել «Աղվեսը դեռ այն ժամանակ էր որսորդ» (1992), «Գազան սիրտը» (1994), «Այսօր կնախընտրեի ինքս ինձ չհանդիպել» (1997) վեպերում, «Բոկոտն փետրվար» (1987), «Թագավորը խոնարհվում է ու սպանում» (2003) և այլ պատմվածքների ժող-ներում: Նոբելյան մրց. (2009):

ՄՅՈՒԼԼԵՐ Մաքս (Ֆրիդրիխ Մաքս, 1823–1900), անգլիացի լեզվաբան, արևելագետ, կրոնագետ: Կրոնագիտ-յան հիմնադիրներից: Հեղինակ է ընդհ. լեզվաբ-յանը, հնդկաբանությանը (սանսկրի-

տի ինչյունաբանություն և քերակ.), բանահյուսությանը վերաբերող աշխ-ների: Հրատարակել է «Ռիգվեդա»-ն (հ. 1–6, 1849–74), «Արևելքի սուրբ գրքերը» (հ. 1–55, 1879–1924) մատենաշարը:

ՄՅՈՒԼԼԵՐ Յոհաննես Պետեր (1801–1858), գերմանացի բնախույզ և ֆիզիոլոգ: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1832): Ժամանակակից ֆիզիոլոգիայի, համեմատ. անատոմիայի և սաղմնաբանության, «Ֆիզիոլոգիական իդեալիզմի» հիմնադիրներից: Աշխ-ները վերաբերում են ԿՆՀ-ի և զգացողության օրգանների ուսումնասիրմանը: Հայտնաբերել և նկարագրել է թարթիչավոր որդերի («Մյուլլերի թրթուր») թրթուրային փուլը ևն:

ՄՅՈՒԼԼԵՐ Պաուլ (1899–1965), շվեյցարացի քիմիկոս: Աշխ-ները վերաբերում են բույսերի պաշտպ-յան համար քիմ. նյութերի կիրառությանը: Բացահայտել է (1939) ԴԴՏ-ի (երկքլորերկֆենիլէթքլորէթան) միջատասպան հատկությունը: Նորելյան մրց. (1948):

ՄՅՈՒԼԼԵՐ Ֆրիդրիխ (1834–1898), ավստրիացի լեզվաբան, հայագետ: 1858-ին եղել է Վիեննայի համալսարանի, ապա՝ արքունական մտնդ-ի տնօրենև: Կայսեր. ԳԱ անդամ: Հեղինակ է «Ընդհանուր ազգագրություն» (1879), «Լեզվաբանության հիմունքներ» (հ. 1–4, 1876–87) և այլ աշխ-ների, նաև հայագիտ. հոդվածների, որոնք ամփոփել է «Արմենիա» (գերմ.) հանդեսում: Պատմաբանասիր. աշխ-ներում անդրադարձել է նաև հայոց գրերի գյուտին, Մեսրոպ Մաշտոցի գործունեությանը, Կորյունի, Ղազար Փարպեցու, Ստեփանոս Տարոնեցու (Ասողիկ), Առաքել Դավրիժեցու և այլոց երկերին: Մ. հայ-ը համարել է իրան. լեզու:

ՄՅՈՒԼԼԵՐ Ֆրից (1821–1897), գերմանացի կենդանաբան: Աշխ-ները վերաբերում են անողնաշարների սաղմնաբանությանը և էկոլոգիային, նաև միմիկրիայի երևույթին: Կենսագենետիկ. օրենքի հեղինակներից է:

ՄՅՈՒՀԵՆՏԻՍՅԱՆ Հովհաննես Գևորգի (1810–1891), տպարանատեր-հրտ., հայկ. նոր տպատառեր ստեղծողներից: 1839-ին դարձել է Սկյուտարի ճեմարանի տպարանի տերը, 1844–45-ին հիմնադրել է սեփ. տպարան, հրատարակել ավելի քան 200 անուն գիրք, մի շարք պարբ-ներ: Թուրք. կառ-յունը Մ-ին է վստահել թուրք. թղթադրամի տպագրությունը: Մ-ի ստեղծած հայ. տպատառերն օգտագործել են նաև Երուսաղեմի, Թիֆլիսի և հայաշատ այլ վայրերի տպարաններում: Ստեղծել է նաև թուրք-ի համար արաբ. նոր տառատեսակներ, որոնք կոչվել են իր անունով:

Արժանացել է կառավար. պարգևների, ստացել է «Թուրքերի Գուտենբերգ» պատվանունը:

ՄՅՈՒՆԽԵՆ (München), ք. Գերմանիայում՝ Իզեր գետի ափին, *Բավարիա* երկրամասի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,34 մլն (արվարձաններով՝ 2,3 մլն, 2010): Եվրոպ. նշանակության տրանսպորտ. հանգույց է: Խոշոր ֆին. և գործարար, գրահրտչ-յան և ՋԼՄ-ների համաշխ. կենտրոն է: Գործում են բազմաթիվ համալսարաններ, թանգարաններ (Բավար. ազգ., ազգագր., Գլիպտոտեկա ևն) և թատրոններ: Ունի օդանավակայան և մետրոպոլիտեն: Առաջին անգամ հիշատակվել է 1158-ին: XIII դ–ից Բավարիայի գլխ. քաղաքն է: Պատմաճարտ. հուշարձաններից են ուշգոթ. ոճի Ֆրաուենկիրխե եկեղեցին (XV դ.) և Հին ռատուշան (XV դ.), բարոկկո ոճի Նիմֆենբուրգ պալատը (XVII–XVIII դդ.): Մ-ում են անցկացվել XX օլիմպ. խաղերը (1972):

ՄՅՈՒԽԵՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ Լյուդվիգ Մաքսիմիլիանի անվան, Գերմանիայի հնագույն համալսարաններից: Հիմնադրվել է 1472-ին: 2016-ին ուներ շուրջ 50 հզ. ուսանող:

ՄՅՈՒՆԽԵՆԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 1938, համաձայնագիր Չեխոսլովակիայի բաժանման վերաբերյալ, սեպտ. 29-ին Մյունխենում ստորագրել են Մեծ Բրիտանիայի (Ն. Չեմբեռլեն), Ֆրանսիայի (Է. Դալադիե), ֆաշիստ. Գերմանիայի (Ա. Հիտլեր) և ֆաշիստ. Իտալիայի (Բ. Մուսոլինի) ղեկ-ները՝ Չեխոսլովակիայի վրա Գերմանիայի ռազմ. ու քաղ. ճնշման պայմաններում: ԵՀՊ-ից հետո Մ. հ. չեղյալ է հայտարարվել, որն իր վերջն. ձևակերպումն է ստացել ՀՍՍՀ-ի և ԳՖՀ-ի միջև 1973-ի դեկտ-ին կնքված պայմանագրով:

ՄՅՈՒՆՍՏԵՐԲԵՐԳ (Münsterberg) Հուգո (1863–1916), գերմանացի հոգեբան և նորկանտական փիլ.: Հոգետեխնիկայի հիմնադիրը: 1892-ից՝ ԱՄՆ-ում: Հեղինակ է «Գիտությունը և իդեալիզմը» (1906), «Ընդհանուր և կիրառական հոգեբանություն» (1915) և այլ աշխ-ների:

ՄՅՈՒՆՑԵՐ (Müntzer) Թոմաս (մոտ 1490–1525), գերմանացի քարոզիչ, աստվածաբան, Ռեֆորմացիայի շրջանի ժող. շարժման առաջնորդ: Քարոզել է բռնի ուժով իշխանությունը ժողդ-ին հանձնելու և արդար հաս-յան գաղափարներ: Մ. փորձել է թուրինասաքսն. մարզում ստեղծել Գյուղացիական պատերազմի կենտրոն, բայց 1525-ին Ֆրանկենհաուզեն ք-ի մոտակայքում նրա ջոկատը ջախջախվել է, իսկ իրեն գերեվարել և մահապատժի են ենթարկել:

ՄՅՈՒՈՆԱՅԻՆ ԱՏՈՄ, ատոմանման համակարգ. կազմված է միջուկից ու բացասական մյուոնից և պարունակում է, որպես կանոն, էլի մի քանի էլեկտրոններ:

ՄՅՈՒՈՆԻՈՒՄ, դրական մյուոնից և էլեկտրոնից կազմված անկայուն կապված համակարգ, որը կառուցվածքով նման է ջրածնի ատոմին: Կյանքի տևողությունը մոտ 10^{-6} *վ* է:

ՄՅՈՒՈՆՆԵՐ (μ), անկայուն, դրական (μ⁺) և բացաս. (μ⁻) լիցքավորված տարր. մասնիկներ՝ 1/2 սպինով, 207 էլեկտրոնի զանգվածով և 10^{-6} *վ* կյանքի տևողությամբ: Պատկանում են լեպտոններին:

ՄՅՈՒՈՆ, Սրբալույս մյուոն, մեռոն (հուն.՝ myuron – անուշաբույր յուղ, ձեթ), քրիստ. եկեղեցում *օծման* համար կիրառվող սրբազան հոտավետ յուղ: Հին կտակարանի սրբության յուղը կամ սուրբ օծության յուղը, նախատիպն է ներկայի Մ-ի: Հայ եկեղեցում Մ. պատրաստվում է հատուկ արարողությամբ (*մյուռնօրհնեք*), ապա բաժանվում եկեղեցու բոլոր վիճակներին:

ՄՅՈՒՈՆՕՐՀՆԵՔ, սրբալույս *մյուռնի* օրհնության օր. կատարվում է կաթողիկոսի հանդիսապետությամբ՝ 5–7 տարվա հաճախությամբ: Ավանդության համաձայն՝ մյուռնն օրհնել է Գրիգոր Ա Լուսավորիչը՝ Սբ Էջմիածնում, որը փոխանցվել է սերնդեսերունդ, ընդ որում՝ Մ-ի ընթացքում հին՝ լուսավորչավանդ մյուռոնը մշտապես խառնվել է նորի հետ՝ նրա շնորհը նորին փոխանցելու նպատակով:

ՄՅՈՒՄ ԻՇԱՅԻ, գվո *Մոկք* նահգ-ում՝ Վանա լճից հվ: Տարածքով համապատասխանում է Խիզանի գվո-ին և Կարկառի մի մասին:

ՄՅՈՒՍԵ (Musset) Ալֆրեդ դը (1810–1857), ֆրանսիացի բանաստեղծ: Ռոմանտիզմի ներկայացուցիչ: Ֆրանսիայի ակադ-ի անդամ (1852): Հեղինակ է 1820–30-ական թթ-ի ֆրանս. իրականությունը պատկերող «Դարիս զավակի խոստովանությունը» (1836, հայ.՝ «Դարուս մէկ զաւակին խոստովանանքը», հ. 1–2, 1874–75) հոգեր. վեպի, «Մայիսյան գիշեր» (հայ.՝ 1897), «Դեկտեմբերի մի գիշեր» (հայ.՝ 1900) ողերգ. մոտիվներով քնար. պոեմների, «Իսպանական և իտալական պատմություններ» (1830) բանաստեղծությունների ժող-ների, «Լորենցաչչո» (1834) պատմ., «Մոմակալը» (1835) սիրային-հոգեբ. պիեսների և այլ գործերի: Հայ. հրատարակվել են նաև «Նոր քերթուածներ» (1878), «Տիցիէնի որդին» (1905) երկերը:

ՄՅՈՒՐԱԴ (Murad) Ֆերիդ (ծ. 1936), ամերիկացի դեղագետ: Բացահայտել է (Լ. Իգնարոյի հետ) օրգանիզմում ազոտի օքսիդի՝ NO-ի ֆունկցիոնալ դերը (արյունատար անոթների պատերի հարթ մկանների թուլացում, անոթ. թրոմբոցիտների ընկճում): Նորելյան մրց. (1998, Լ. Իգնարոյի և Ռ. *Ֆերկգոտի* հետ):

ՄՅՈՒՐԱՏ (Murat) Յոախիմ (1767–1815), Ֆրանսիայի մարշալ (1804), Նեապոլի թագավոր՝ 1808–15-ին: Ծագումով՝ հայ: *Նապոլեոն I*-ի զինակիցը և քրոջ ամուսինը (1800-ից): Մասնակցել է նապոլեոնյան բոլոր պատերազմներին, աչքի է ընկել հրամ. ունակություններով և բացառիկ խիզախությամբ, որի համար Նապոլեոնը նրան պարգևատրել է Նեապոլի թագով: Ռուսաստանի դեմ 1812-ի արշավանքի ժամանակ գլխավորել է 28-հզ-անոց հեծյալ կորպուս: Նապոլեոն I-ի փախուստից հետո ղեկավարել է նահանջող բանակը:

ՄՅՈՒՐԴԱԼ (Myrdal) Գունար Կառլ (1898–1987), շվեդ տնտեսագետ: 1947–57-ին եղել է ՄԱԿ-ի Եվրոպայի գծով տնտ. հանձնաժողովի գործադիր քարտուղար: Աշխ-ները վերաբերում են միջազգ. տնտ. հարաբերություններին, զարգացող երկրների տնտ-յանը: Նորելյան մրց. (1974, Ֆ. *Հայեկի* հետ):

ՄՅՈՒՐԺԵ (Murger) Անրի (1822–1861), ֆրանսիացի գրող: Մ-ի «Դրվագներ բոհեմի կյանքից» (1851) վեպի հիման վրա Ջ. *Պուչչինին* գրել է իր «Բոհեմ» (1896) օպերան:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Մարտիրոս Մնացականի (1837–1920), դերասան, ռեժ., թատեր. գործիչ: 1859-ից եղել է Կ. Պոլսի Արլ. թատրոնի, Պետրոս Սնաղաքյանի և Հակոբ Վարդովյանի թատրոններում (1872–79), Թիֆլիսի հայկ. (1880–82), Սերովբե Պենկլյանի օպերետ. թատերախմբերում, Օսմ. դրամատիկ. թատրոնի (1885–1914-ին՝ նաև տնօրեն, ռեժ.) առաջատար դերասաններից (Ժորժ Դյուվալ՝ Դյումա-որդու «Կամելիազարդ տիկինը», Շայլոկ՝ Վ. Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը», Արբենին՝ Մ. Յ. Լերմոնտովի «Դիմակահանդես», Քին՝ Դյումա-հոր «Քին», ևն):

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ (Մնացականով) Ալեքսանդր Միդորի (1921–2004), գեն-լեյտ. (1986): ԽՄ հերոս (1945): Հերոսի կոչման արժանացել է Լենինգրադի ազատագրման մարտերում (1943–44) ցուցաբերած արիության համար: Պատերազմից հետո ծառայել է *Թամանյան դիվիզիայում*, խորհրդ. բանակի ԳՇ-ում (Մոսկվա): Զորացրվել է 1986-ին:

Լենինի, Կարմիր աստղի, ՀՄՊ 1-ին աստիճանի, «ԽՍՀՄ ԶՈՒ-ում Հայրենիքի ծառայության համար» 3-րդ աստիճանի շքանշաններ:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Աննա Միքայելի (1884–1951), դաշնակահար: Պրոֆ. (1934): Երևանի երաժշտ. ստուդիայի (1921) և կոնսերվատորիայի (1923) հիմնադիրներից, 1933-ից՝ դաշնամուրի ամբիոնի առաջին ղեկ.:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Ասատուր Շմավոնի, **Ասատուր Շեմս** (1912–1983), պատմաբան, բանասեր, արվեստաբան: Պատմ. գիտ. դ-ր (1964), պրոֆ. (1973): Մամիկոնյան ***Մնացականյանի*** հայրը: Հեղինակ է «Հայկական զարդարվեստ» (1955), «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ» (1966) աշխ-ների, «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» (1956), «Հայրեններ» (1995) ժող-ների (քնն. բնագրերով), Նաղաշ Հովնաթանի, Պաղտասար Դպիրի (համահեղ.՝ Շ. Նազարյան), Գրիգոր Դ Տղայի մասին աշխ-ների, կազմել է նրանց գործերի գիտ. բնագրերը: Լևոն ***Խաչիկյանի*** հետ ղեկավարել է Մնդ-ի ձեռագրացուցակի (հ. 1, 2, 1965, 1984) կազմման ու խմբագրման աշխ-ները:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Արամայիս Նավասարդի (1911–1984), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1957), պրոֆ. (1966): Աշխ-ները վերաբերում են հայ ժողդ-ի ազգ-ազատագր. պայքարի, Անդրկովկասում և Հայաստանում հեղ. շարժման պատմության հարցերին, ազգ. հարցի տեսությանը, հայ ժողդ-ի մասնակցությանը ՀՄՊ-ին:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Արմեն Սերգեյի (1918–1987), հեռակառավարման ռադիոտեխնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1955), պրոֆ. (1957): Մշակել է ԵԱՄ-ներից տեղեկությունների ընդունման, մշակման և բաշխման համակարգեր, ստեղծել տիեզերանավերի, տիեզ. կայանների միակցման, տիեզերքում ապարատների ինքնաշխատ հավաքման ռադիոտեխ. համակարգեր: Մասնակցել է ԽՍՀՄ-ում հակաարբանյակ. զենքի ստեղծմանը:

Լենինյան (1967), ԽՍՀՄ Պետ. (1978) մրց-ներ:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Արտեմ Խաչատուրի (1936–1994), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1989): Կատարել է տաք գազերի և ցածր ջերմաստիճան. պլազմայի ճառագայթ. (օպտիկ.) բնութագրերի տես. հաշվարկ. հետազոտություններ: Հետազոտել է անհավասարակշիռ ատոմամոլ. պլազմայում ընթացող կինետիկան, ջերմափոխանակության և ֆիզ. գազադինամիկայի առանձին հարցեր:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Արուսյակ Վահրամի (1922–1993), հիգիենիստ: Բժշկ. գիտ. դ-ր (1967), պրոֆ. (1970): ՀԽՍՀ վաստ. բժիշկ (1966): Աշխ-ները վերաբերում են օրգանիզմի վրա շրջակա միջավայրի բացաս. գործոնների ազդեցությանը և բնակչության կյանքի սան. պայմանների ուսումնասիրությանը:

ՀՀ ԱՆ գլխ. հիգիենիստ (1973–93):

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Գուրգեն Ստեփանի (1936–2014), ճարտ.: Նախագծերով (համահեղ.) Երևանում կառուցվել են Գ. Սունդուկյանի անվ. դրամատիկ. թատրոնը (1966, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1970), Մել. կենսբյան ինստ-ը (1968), ՀԽՍՀ ԳԱ տպարանը (1971), Քիմ. ֆիզիկայի ինստ-ը (1972–75): Կենտր. «Կոմետա» ԳՀԻ համալիրն Արագած լ-ան վրա և Նոր Ամբերդ կայանի հյուրանոցն ու հանգստյան տունը (երեքն էլ՝ 1978), Սարդարապատում՝ ՀԱՊԹ ֆոնդապահոցը (1979), Դոնի Ռոստովի հայ-ռուս. բարեկամության թանգարանի համալիրը և նորոգվել Սբ Խաչ եկեղեցին (1968–69): ԽՍՀՄ ՆԽ մրց. (1981):

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Էլվիրա Գուրգենի (ծ. 1944), բալետի արտիստուհի: ՀՀ ժող. արտիստ. (1978): Աշոտ ***Ասպտուրյանի*** կինը: 1963-ից՝ ԵՕԲԹ-ի մենապարուհի (Ֆրիգիա, Էգինա, Գայանե՝ Ա. Խաչատրյանի «Սպարտակ», «Գայանե», Շամիրամ՝ Գ. Եղիազարյանի «Արա Գեղեցիկ և Շամիրամ», Ժիզել՝ Ա. Ադանի «Ժիզել», ևն), 1997-ից՝ փորձավար:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Լալա Բարկենի (ծ. 1957), դերասանուհի, ասմունքող: ՀՀ վաստ. արտիստ (2006): Պրոֆ. (2008): Աշոտ ***Համբարձումյանի*** կինը: Երևանի երիտասարդ. էքսպերիմենտալ, Վանաձորի դրամատիկ., Երևանի Գ. Սունդուկյանի անվ., «Մետրո», «Միեր Մկրտչյան» արտիստ. թատրոնների դերասանուհի [Մոնյա՝ Ա. Պ. Չեխովի «Քեռի Վանյա», Սմերալդինա՝ Կ. Գոլդոնիի «Երկու տիրոջ ծառան», Մայր՝ Կ. Չապեկի «Մայրը», Գրացիելլա՝ Գ. Մարկեսի «Սիրային նախատինք» բազկաթոռին նստած ամուսնուն» (մոնոներկայացում)] ևն: Հանդես է եկել նաև հեռուստաթատրոնում: Նկարահանվել է «Ընկեր Փանջունի», «Մեր բակը 1», «Մեր բակը 3», «Ձիավոր, որին ոչ ոք չէր սպասում» և այլ ֆիլմերում: Բեմադրել է Կ. Չապեկի «Մայրը» (2012), Հ. Պարոնյանի «Հում օր կամ ոչնչից մեծ աղմուկ» և այլ գործեր: Հեղինակ է հեռուստատես. երգիծ. ծրագրերի, համահեղինակ՝ «Գեղարվեստական խոսքի մատուցման արվեստը» գրքի (2010):

ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2014):

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Լարիսա Հրանտի (ծ. 1937), գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1991), պրոֆ. (1992): Հեղինակ է «Արևմտահայ քննադատական մտքի պատմությունից» (1982), «Քասներորդ դարասկզբի արևմտահայ գրական քննադատությունը» (1990), «Վերհուշը Հրանտ Մաթևոսյանի արձակում» (2006) և այլ աշխ-ների:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Կարեն Վանուշի (ծ. 1977), ըմբիշ: Միջազգ. կարգի ս. վ. (1997): Հունա-հռոմ. ոճի ըմբշամարտի Եվրոպայի կրկնակի չեմպիոն (1997, 2006), աշխարհի առաջնության 2-րդ մրցանակակիր:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Հայկ Գերասիմի (ծ. 1976), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (2013): Աշխ-ները վերաբերում են ՀՀ արժութային շուկայի, աուդիտային ծառայությունների մատուցման, ռիսկերի գնահատման հարցերին:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Հենրիկ Կարապետի (1923–2001), տառաստեղծ, նկարիչ: ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1968): Ստեղծել է «Սովորական նոր» (1954), «Մնացականյան» (1963), «Ձվարթնոց» (1964), «Լրագրային» (1970), «Հանրագիտարանային» (1974, որով տպագրվել են ՀՍՀ հատորները), «Ռոսլին» (1985) և այլ տառատեսակներ: Հեղինակ է «Հայկական տպագրական և գեղարվեստական տառատեսակներ» (1964), «Հայկական տառատեսակներ» (1972, 1979) ալբոմների, պարբ-ների գլխագրերի, գրքերի ձևավորումների (Կ. Սուրենյանի «Արևորդիները», 1979, Ս. Ուտչենկոյի «Հուլիոս Կեսար», 1980, ևն):

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Մամիկոն Ասատուրի (ծ. 1942), աստղաֆիզիկոս, մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1984), պրոֆ. (1989): Ասատուր ***Մնացականյանի*** որդին: 1972–85-ին՝ Բյուրականի աստղադիտարանի գիտ. քարտուղար: Աշխ-ները վերաբերում են Էյնշտեյնի ընդհանրացրած գրավիտացիայի տեսության կիրառությանը աստղաֆիզիկայի մեջ, աստղ. վիճակագրությանը և դինամիկային, բարախիչներին, բռնկվող աստղերին ու աստղասփյուռներին: 1990-ից՝ Փասադենայի համալսարանում (ԱՄՆ):

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Մանուկ Յախշիբեկի (1934–1995), գրող, կինոսցենարիստ: Հեղինակ է «Հալոցք» (1966), «Երկուշաբթիից երկուշաբթի» (1968) վիպակների, «Մեծ քաղաքի աղմուկը» (1962), «Նահանջ տարի» (1974) և այլ պատմվածքների ժող-ների, «Այստեղ, այս խաչմերուկում» (1975, ըստ Ժ. Հարությունյանի «Խաչմերուկ» պիեսի), կինոսցենարների («Երջանկության մեխնիկա», 1983, ևն), կինովիպակների («Մայրիշխանություն», «Պապը», 1988, ժող.):

ՀՀ Պետ. (1983), ՀԳՄ Գ. Սունդուկյանի անվ. (1982), Մանհայմի կինոփառատոնի «Ոսկե դուկատ» մրց-ներ:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Ստեփան Խաչատուրի (1917–1994), ճարտ-յան պատմաբան: Ճարտ-յան դ-ր (1967): Հեղինակ է «Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը» (1960), «Նիկողայոս Մառը և հայկական ճարտարապետությունը» (1969), «Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները» (1971), «Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը IX–XIV դարերում» (1976), «Վարպետաց վարպետներ. Մանուել, Տրդատ, Մոմիկ» (1982), «Աղթամար» (1983), «Հայկական գավիթների ճարտարապետությունը» (ռուս., 1952), «V–VII դդ. Հայաստանի և Բյուզանդիայի խաչագմբեթ կոմպոզիցիաները» (ռուս., 1988), համահեղ.՝ «Հաղպատ» (իտալ., անգլ., 1967), «Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի ճարտարապետության» (ռուս., 1978), «Հայկական միջնադարյան արվեստ» (գերմ., 1981), «Սևան» (իտալ., անգլ., 1987) աշխ-ների:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Վազգեն Միքայելի (1915–1998), գրականագետ-քննադատ, խմբ.: Բանասիր. գիտ. թեկնածու (1962): 1948–53-ին՝ ***«Գրական թերթ»***, 1958–61-ին՝ ***«Սովետական գրականություն»*** պարբ-ների խմբ.: Հեղինակ է «Գրական հարցեր» (1958), «Գեղամ Սարյանի պոեզիան» (1963), «Քննադատի աշխարհը» (1981) և այլ աշխ-ների, «Խոստովանանք կամ Հարյուր նամակ Ստելլային (1941–45)» (1985) հուշագր-նամականու, «Իմ ժամանակակիցները» (1989) հոդվածների ժող-ի:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Վիլեն Հակոբի (ծ. 1933), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դ-ր (1987), պրոֆ. (1989): Աշխ-ները վերաբերում են դեղաբույսերի քիմ. կազմի ուսումնասիրման, կենսաբանորեն ակտիվ միացությունների անջատման և քիմ. կառուցվածքի որոշման խնդիրներին: ՌԲՆԳԱ (1998-ից), Բնության և հաս-յան մասին ԳԱ հայկ. մասնաճյուղի (1998-ից) ակադ. քարտուղար, ԵԳԱ անդամ (2003-ից):

ՄՆԱՑԱԿԱՆՈՎ Տիգրան Սերգեյի (1899–1968), թերապևտ: Բժշկ. գիտ. դ-ր (1940), պրոֆ. (1940): Ուզբ. ԽՍՀ գիտ. վաստ. գործիչ: Աշխ-ները վերաբերում են շնչառ., սիրտանոթ., ստամոքսաղիք. համակարգերի, ներզատիչ գեղձերի ու երիկամների

հիվանդություններին: Զբաղվել է ՀԽՍՀ առողջարանների ուսումնասիրությամբ, «Ջերմուկ» առողջարանի հիմնադիրներից է: ՀԽՍՀ թերապևտների, ներզատաբանների գիտ. ընկ-յան նախագահ (1956–68):

Լենինի, ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքանշաններով:

ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄ (աստղագիտ.), տիեզ. *ֆոնային ճառագայթում*, որի սպեկտրը մոտ է 3 K ջերմաստիճանի բացարձակ սև մարմնի սպեկտրին: Դիտվում է մի քանի *մմ*-ից մինչև տասնյակ *սմ* ալիքներում, գործնականում համասեռ է: Հայտնաբերել են Ա. *Պենզիասն* ու Ռ. *Վիլսոնը*: Մ. ճ-ման հայտնագործումով հաստատվել է ջերմ Տիեզերքի վարկածը, հնարավոր է դարձել Տիեզերքի քվազիֆրիդմանյան մոդելի փորձառ. վկայությունը:

ՄՆԴՈՅԱՆՑ Աշոտ Աշոտի (1909/10–1966), ճարտ.: Նախագծերով Մոսկվայում կառուցվել են «Ապստամբության» հրապարակի բարձրահարկ շենքը (1954), Կրեմլի Համագումարների պալատը (1961), կառուցապատվել Նոր Արբատ պողոտան (1964–69, բոլորը՝ Մ. Վ. *Պոսոխինի* հետ):

ԽՍՀՄ Պետ. մրց. (1949):

ՄՆԵՄՈՆԻԿԱ (հուն.՝ mnemonika – մտապահելու արվեստ), **մնեմոտեխնիկա**, մտապահելու գործընթացը թեթևացնող և արհեստ. զուգորդությունների ձևավորման ճանապարհով հիշողության ծավալը մեծացնող հնարների և միջոցների ամբողջություն:

ՄՆԵՄՈՍԻՆԵ (Mnemosyne), հիշողության աստվածուհին հուն. դից-յան մեջ, տիտանուհի, *Ուրանոսի* և *Գեայի* դուստրը, 9 մուսաների մայրը: Փխբ. իմաստով՝ հիշողություն:

ՄՆԵՅԱՆ Բյուրեղիկ Սաղաթելի (ծ. 1935), դերասանուհի: ՀՀ վաստ. արտիստ (1978): 1955-ից՝ Գավառի թատրոնի դերասանուհի: Մարմնավորել է դեռահաս տղաների, կատակերգ. դերեր:

ՄՆԵՍԻԿԼԵՍ (Mnesikles), մ. թ. ա. V դ-ի 2-րդ կեսի հույն ճարտ.: Կառուցել է Աթենքի Ակրոպոլիսի սյունազարդ մուտքը (Պրոպիլեոնը):

ՄՆՋՈՒՐ, **Մունջուր**, գետ Հայկ. լ-աշխարհում, Արածանիի աջ վտակը: Սկիզբ է առնում համանուն լ-ների հվ. լանջերից: Երկ.՝ 163 *կմ*: Խարբերդի դաշտում միախառնվում է Արածանիին:

ՄՆՋՈՒՐ, **Մզուր**, **Մուզուր**, գվո *Բարձր Հայք* նահգ-ում՝ Արածանիի աջակողմյան վտակ Քղի գետի Մնձուր օժանդակի հովտում (այժմ՝ Օվաջղի գվդկ): Մ. կազմել է *Եկեղյաց* գվո-ի մի մասը, հետագայում, վերջինիս մասնատման հետևանքով, արդեն հիշատակվում է որպես առանձին գվո:

ՄՆՋՈՒՐԻ (Տեմիրճյան) Հակոբ Իգնատիոսի (1886–1978), գրող: Նրա ողջ ստեղծագործությունը (պատմվածքներ, ակնարկներ, հեքիաթներ, թատերգություններ) հագեցած է հայրենասիրությամբ, հայրենի եզերքի պատկերներով, իրապաշտ. նկարագրություններով: Հեղինակ է «Կապույտ լույս» (1958), «Արմտան» (1966), «Կռունկ, ուստի՞ կուգաս» (1974) պատմվածքների ժող-ների:

ՄՆՋՈՒՐԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, **Մնձուր**, լ-ներ Հայկ. լ-աշխարհում, Ներքին Տավրոսի արմ.՝ առավել բարձր մասը: Զգվում է Եփրատից մինչև Մերջան լ-գագաթը: Երկ.՝ 90 *կմ*, բարձր.՝ 3147 *մ* (Զիսրաթ լ.): Մ. լ-ի հվ. լանջից սկիզբ է առնում համանուն գետը:

ՄՆՋԱԽՄԱ, բեմարվ-ի տեսակ, որտեղ դերասանի արտահայտչալեզուն շարժումն է, դիմախաղը և ժեստը: Մ. առաջին անգամ նկարագրվել է մ. թ. ա. 420-ին (Քսենոփոնի «Խնջույք»): Նոր ժամանակներում Մ. թատերաէստրադ. ժանր է: XX դ-ի սկզբին Մ-ի տարրերը թափանցել են նաև դրամատիկ. թատրոն (Մ. Ռայնհարդ, Ե. Վախթանգով և ուր.): Մ-ի խոշորագույն վարպետ էր Լեոնիդ *Ենգիբարյանը*: 1972-ից գործում է Երևանի մնջախաղի թատրոնը:

ՄՆՋՈՅԱՆ Արմենակ Լևոնի (1904–1970), քիմիկոս: ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1953, թղթ. անդամ՝ 1950-ից): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): Սոց. աշխ. հերոս (1969): ՀԽՍՀ ԳԱ ՆՕՔԻ-ի հիմնադիր-տնօրեն (1955–70): ՀԽՍՀ ԳԱ փոխնախագահ (1953–60), քիմ. գիտ. բաժանմունքի ակադ. քարտուղար (1964–67): ՀԽՍՀ-ում ֆիզիոլոգիապես ակտիվ նյութերի սինթեզի հիմնադիրը: Եղիա և Հովհաննես *Մնջոյանների* եղբայրը: Աշխ-ները վերաբերում են բուս. ու հանք. նյութերից նոր, արդյունավետ դեղանյութերի սինթեզին և օրգանիզմի վրա դրանց ազդեցության հարցերին: Նրա ղեկավարությամբ սինթեզել և ուսումնասիրել են բազմաթիվ նոր, կենսաբանորեն ակտիվ նյութեր, որոնք փոխարկված ալկիլ-օքսի-բենզոյական թթուների, քացախաթթուների և երկհիմն կարբոնաթթուների ածանցյալներ են: Դրանց մի մասը (դիթիլին, արփենալ, սուբեխոլին ևն) կիրառում են սիրտանոթ., նյարդ., չարորակ նորագոյացությունների և այլ հիվանդությունների բուժման նպատակով: Մ-ի անունով է կոչվում ՆՕՔԻ-ն (1971-ից):

ՀԽՍՀ Պետ. մրց. (1978), Լենինի 1955, 1967, 1969) և ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (1945), Կարմիր աստղի շքանշաններ:

ՄՆՋՈՅԱՆ Եղիա Լևոնի (1917–1997), քիմիկոս: Կենսբ. գիտ. դ-ր (1973): Արմենակ և Հովհաննես *Մնջոյանների* եղբայրը: Աշակել է կոնյակի սպիրտի թորման գիտ. հիմունքները և կաղնու փայտի օգտագործման նոր տեխնոլոգ. եղանակներ:

ԽՍՀՄ «Պատվո նշան» (2) շքանշան:

ՄՆՋՈՅԱՆ Հովհաննես Լևոնի (1920–1998), քիմիկոս: Կենսբ. գիտ. դ-ր (1977): Արմենակ և Եղիա *Մնջոյանների* եղբայրը: Մ-ի ղեկավարությամբ սինթեզել են կենսբ. ակտիվ նյութեր (ամինալկիլ էսթերներ, թիոէսթերներ և ամիդներ), որոնք կիրառվում են բժշկության մեջ՝ շնչարգելության, պարկինսոնյան հիվանդության, ստամոքսի խոցի, էպիլեպսիայի և այլ հիվանդությունների բուժման նպատակով:

ՀԽՍՀ Պետ. մրց. (1978), ԽՍՀՄ Կարմիր աստղի (2) շքանշան:

«ՄՇԱԿ», հաս-քաղ., տնտ., գր. պարբերաթերթ (1872–1921, Թիֆլիս): Հիմնադիր-խմբ.՝ Գրիգոր *Արծրունի* (մինչև 1892-ը), խմբ-ներ՝ Ալեքսանդր Քալանթար, Համբարձում Առաքելյան, Լեո, Տիգրան Հախումյան: Եղել է ազատամիտ հայ մտավորականության գաղ. պաշտոնաթերթը, ունեցել է ընդգծված ռուս. կողմնորոշում:

«ՄՇԱԿ», ազգ., քաղ., գր. պարբերաթերթ (1925–57, Ֆրեզնո՝ հայ., անգլ.): Խմբ.՝ Լևոն Լյուլեճյան:

ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐ, մշակաբույսերը վնասող կամ ոչնչացնող օրգանիզմներ: ՀՀ-ում տարածված է 600–700 տեսակ (նեմատոդներ, կողունջներ, միջատներ, տզեր ևն): Պայքարում են ագրոտեխ., կենսբ., ֆիզմեխ., քիմ., կենսաֆիզ. և կենսաքիմ. միջոցներով:

«ՄՇԱԿՈՅԹ», երիտասարդ., գր. ամսաթերթ (1925–37, Փարիզ): Խմբ-հրտ-ներ՝ Գեղամ Աթմաճյան, Պետրոս Զարոյան:

«ՄՇԱԿՈՅԹ», ազգագր. տարեգիրք (1948, Ստամբուլ): Խմբ-հրտ.՝ Թորոս Ազատյան:

«ՄՇԱԿՈՅԹ», արվ-ի, գրկ-յան և գիտ. պարբերագիրք (1967, 1970, 1972, Հալեպ): Խմբ-հրտ.՝ Անդրանիկ Արարատ (Նաճարյան):

ՄՇԱԿՈՒՅԹ, մարդու և հաս-յան զարգացման որոշակի մակարդակ, որն արտահայտվում է մարդկանց գործունեության և կյանքի կազմակերպման ձևերով ու տիպերով, նաև նրանց ստեղծած նյութ. և հոգևոր արժեքներով: «Մ.» հասկացությունն օգտագործվում է որոշակի պատմ. դարաշրջանների (անտիկ Մ.), հաս-յունների, ժողդ-ների և ազգերի (մայաների Մ.), նաև կյանքի ու գործունեության առանձնահատուկ եղանակների զարգացման մակարդակը բնութագրելու համար (հելլենիստ. Մ., հնագիտ. Մ., հայկ. Մ., գեղ. Մ. ևն):

«Մ.» հասկացությունը վերագրում են նաև կյանքի զուտ հոգևոր ոլորտին: Մ. ներառում է մարդկանց գործունեության առարկայական արդյունքներ (մեքենաներ, սարքավորումներ, արվ-ի գործեր, բարոյականության և իրավունքի նորմեր ևն), ինչպես նաև մարդկային ուժեր և ունակություններ, որոնք իրականացվում են գործունեության մեջ (գիտելիքներ, հմտություններ, ունակություններ, ինտելեկտի մակարդակը, բարոյական և գեղագիտ. զարգացումը, աշխարհայացքը, մարդկանց շփման միջոցներն ու ձևերը):

ՄՇԿԱԳԵՂՁԵՐ, որոշ սողունների (կոկորդիլոսներ, հատերիա, օձեր) և կաթնասունների (մշկայծյամ, մշկացուլ, կուղր, մշկամուկ) էգերի մաշկ. գեղձեր, որոնք արտադրում են հոտավետ նյութ՝ մուշկ:

ՄՇԿԱՄՈՒԿ (Desmana moschata), **օնդատրա**, դաշտամկների ենթաընտանիքի կիսաջր. կաթնասուն կենդանի: Մարմնի երկ.՝ մինչև 35, պոչինը՝ մինչև 28 *սմ*: Հայրենիքը Հս. Ամերիկան է, կլիմայավարժեցվել է Եվրասիայի մի շարք երկրներում, որտեղից լայնորեն տարածվել է: Արդյունագործ. կարևոր կենդանի է (մորթին): Կարող է տուլարեմիայի և պարատիֆի հարուցիչների փոխանցող դառնալ:

ՄՇԿԱՅԾԱՄ (Moschus moschiferus), **կաբարգա**, որոճողների ենթակարգի երկկճղակավոր կենդանի: Երկ.՝ մինչև 1 *մ*: Արուներն ունեն վերին ծնոտի երկար ժանիքներ, որովայնի վրա՝ *մշկագեղձեր*: Ապրում է Ասիայի լեռն. տայգայում: Արդյունագործությունը սահմանափակ է (մուշկի համար): Հիմալայան Մ. գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում, սախալինյանը պահպանվում է:

ՄՇԿԱՎԱՆՔ, **Մշակավանք**, XIII դ-ի ճարտ. համալիր ՀՀ Տավուշի մարզի Կողբ գ-ի մոտակայքում: Պահպանվել են Սբ Աստվածածին եկեղեցին և արմ-ից կից գավիթը: Եկեղեցին քառակուսի միանավ դահլիճ է՝ ծածկված կիսագլան. թաղով, խորանի 2 կողմում՝ երկհարկ ավանդատներով: Հարուստ է խաչքարերով և վիմ. արձանագրություններով: Վերականգնվել է 1955–60-ին:

ՄՇԿԸՆԿՈՒԶԶԻՆԻ, մշկընկուզազգիների ընտանիքի մշտադալար ծառերի ցեղ: Հայտնի է վայրաճ 100–120 տեսակ՝ Ասիայի արևադարձ. շրջաններում: Պտուղներից ստանում են համանուն համեմունք.

սերմեր՝ մշկընկույզ, մշկընկուզենու ծաղիկ (մացիս) և եթերայուղ:

ՄՇՈ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻ ԴՊՐՈՑ, առաջին թարգմ-յունները կատարվել են V դ–ում: Ուս. և գրչ. կյանքն աշխուժացել է XI–XII դդ–ում՝ ***Պողոս Տարոնացու*** օրոք, ծաղկման է հասել 1271–81–ին, երբ ***Ներսես Մշեցին*** Խոր վիրապից այստեղ է տեղափոխել վարդապետ. դպրոցը (հավանաբար 1282–ին տեղափոխվել է Վայոց ձորի Աղրերց վանք, որտեղ հետագայում ստեղծվել է ***Գլաձորի համալսարանը***): Մ. Ա. վ. դ–ից ձեռագրեր են պահպանվել Ներսես Մշեցու, նրա աշակերտներ Եսայի Նչեցու, Բարսեղի, Լուսերի, Ստեփանոսի և ուր. ընդօրինակություններով:

ՄՇՈ ԲԱԲԲԱՆ, հայ–ի «կը» ցայուղի բարբառ: Խոսվել է Մշո դաշտում և հարակից վայրերում (Խնուս, Ալաշկերտ, Մանազկերտ, Արծկե, Արճեշ, Խլաթ, Բաղեշ): Ունի քառաստիճան (բ՛–բ–պ–փ) բաղաձայն. համակարգ:

ՄՇՈ ԳԵՂԱՄ, Տատրակ, Տարոնցի, Ասողիկ (Տեր–Կարապետյան Գեղամ, 1866–1918), գրող, բանահավաք, ազգ–հաս. գործիչ: ՀՅԴ կուս–յան անդամ: 1908–ի երիտթուրք. հեղաշրջումից հետո ընտրվել է օսմ. խորհրդարանի պատգմ. (մինչև 1915–ը): Հեղինակ է «Տարօն աշխարհի պատկերները և պատմուածքները» (1931), «Նշխարներ Մշո Գեղամէն» (1946) արձակ գործերի ժող–ների, նաև բանասիր. աշխ–ների: «Ապրիլյան կոտորածը» երկում դատապարտել է Թալեաթին և Էնվերին:

ՄՇՈ ԴԱՇՏ, գոգավորություն Հայկ. լ–աշխարհում՝ Արածանիի միջին հոսանքի ավազանում: Տարածքը՝ 1600 *կմ*²: Կլիման ցամաքային է, լանդշաֆտը՝ տափաստան.: Ձորակներում, գետահովիտներում հանդիպում են նոսրանտառներ ու թփուտներ: Արմ. Հայաստանի խիտ բնակեցված և արգավանդ շրջաններից էր: Մ. դ–ի հվ–ում է ***Մուշ*** ք.:

«ՄՇՈ ՃԱՌԸՆՏԻՐ», **Տօնական**, հայտնի հայ. ամենամեծ մագաղաթե ձեռագիրը (1200–02, Մտնդ., ձեռ. № 7729, Երզնկայի Ավագ վանք, գրիչ՝ Վարդան Կարնեցի, ծաղկող՝ Ստեփանոս, պատվիրատու՝ Բաբերդի տանուտեր Աստվածատուր): Բաժանված է 2 մասի, կազմ չունի, քաշը՝ 28 *կգ*: 660 թերթից պահպանվել է 620–ը (40–ը կորած է), 17–ը Վենետիկում է, 1–ը՝ Վիեննայում, 602–ը՝ Մտնդ–ում): 1204–1915–ին «Մ. Ճ.» պահվել է Մշո Առաքելոց վանքում: Մեծ եղեռնի օրերին ձեռագրի 2 մասը տարբեր ուղիներով բերվել է Թիֆլիսի Հայոց ազգագր. ընկ., ապա՝ Երևան:

ՄՇՈ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ, Սուրբ Ղազարի վանք, Թարգմանչաց վանք, միջնադար. ճարտ. համալիր Տուրուբերան նահգ–ի Տարոն գվռ–ում՝ Մուշ ք–ից 4 *կմ*–հվ: Ըստ ավանդության՝ 312–ին կառուցել է Գրիգոր Լուսավորիչը: Հայտնի է XI դ–ից: Գլխ.՝ Սբ Առաքելոց եկեղեցին (XI դ.) աղյուսաշեն, ներքուստ՝ խաչաձև, 4 անկյուններում՝ երկհարկ ավանդատներով, արտաքուստ ուղղանկյուն գմբեթավոր հորինվածք է: Սբ Առաքելոց եկեղեցուն հվ–ից կից է Սբ Ստեփանոս միանավ, թաղածածկ եկեղեցին (1663): Համալիրից մոտ 300 *մ* արլ. կանգուն է Սբ Թադևոս գմբեթավոր ոչ մեծ եկեղեցին (XI–XII դդ.):

ՄՇՈ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔ, Մշո Սուլթան Սուրբ Կարապետ, Գլակավանք, Իննականյան վանք, ճարտ. համալիր Տուրուբերան նահգ–ի Տարոն գվռ–ի Մուշ ք–ի հս–արմ–ում՝ Աշտիշատ ավանից ոչ հեռու՝ Քարքե լ–ան լանջին: Ըստ ավանդության՝ հիմնել է Գրիգոր Լուսավորիչը (առաջին վանահայրը՝ Զենոբ Գլակ): Գլխ.՝ Սբ Ստեփանոս եկեղեցին կառուցվել է VII դ–ում, Սբ Կարապետը՝ XVI դ–ում: 1788–ին վանքը հիմնովին վերակառուցվել է. բաղկացած էր մենաստանից և եկեղեցուց, նախամուտք–զանգակատնից, 4 թաղածածկ բազիլիկ եկեղեցի–վկայարաններից (հնագույնը՝ IV դ–ի սկիզբ): 1915–ին հայերին հաջողվել է պահպանել վանքում եղած արժեքավոր հուշարձանները, այդ թվում՝ 1750–ի ձեռագիր, որը տեղափոխվել է Էջմիածին: Այժմ ավերակ է:

ՄՇՎԵԼԻՋԵ Շալվա Միքայելի (1904–1984), վրացի կոմպոզիտոր: ՎԽՍՀ ժող. արտիստ (1958): 1942–52–ին՝ Վրաստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահ: Հեղինակ է «Ասք Տարիելի մասին» (1946), «Մեծ վարպետի աջը» (1961) օպերաների, 5 սիմֆոնիայի, օրատորիաների, սիմֆ. պոեմների, սյուիտների, երգերի, թատրոնի ու կինոյի երաժշտության: Գրառել է վրաց. ժող. երգեր:

ԽՍՀՄ (1942, 1947) և ՎԽՍՀ (1971) Պետ., Ջ. Ներուի անվ. (1973) մրց–ներ:

ՄՇՈՒԽ, մանր ջր. կաթիլների կամ սառցե բյուրեղիկների կուտակում մթն–ի գետնամերձ շերտերում: Նվազեցնում է տեսանելիությունը մինչև 1 *կմ*, իսկ մեծ ինտենսիվության ժամանակ՝ մինչև հարյուրավոր ու տասնյակ մետրեր: ՀՀ–ում Մ–ով օրեր դիտվում են տարվա բոլոր եղանակներին, հատկապես՝ ձմռանը, առլզն–ը՝ Արարատյան դաշտում՝ կապված չոր օդ. զանգվածների ներթափանման հետ: Ուժեղ Մ. ուղեկցում է խորշակին: Մեծ ք–ների (Երևան, Գյումրի, Վանաձոր, Կապան, Հրազդան, Ալավերդի) վրա Մ. է դիտվում օդը ծխով ու փոշով աղտոտվելիս (տես նաև *Սմոգ*):

ՄՈԲԻԼԻԶՄ (լատ.՝ mobilis – շարժուն), **շարժունակության** վարկած, որը ենթադրում է երկրակեղևի (լիթոսֆերայի) մայրցամաք. խոշոր բեկորների հորիզոն. զգալի (մինչև մի քանի հզ. *կմ*) տեղաշարժերը միմյանց և բևեռների նկատմամբ՝ ժամանակի ընթացքում: Մ–ի գիտականորեն մշակված վարկածն առաջինը ձևակերպել է գերմանացի երկրաֆիզիկոս Ա. Վեգեները (մայրցամաքների դրեյֆի տեսություն): Մ–ի ժամանակակից տարբերակը՝ նոր գլոբալ տեկտոնիկան (կամ սալերի տեկտոնիկան), գլխավորապես հիմնված է օվկ–ի հատակի ռելիեֆի և մագնիս. դաշտերի ուսումնասիրության, ինչպես նաև հնամագնիսականության տվյալների վրա:

ՄՈԳԱԴԻՇՈ (սոմալ.՝ Muqdisho), ***Սոմալիի*** մայրաքաղաքը (1960–ից), նվ–ինգստ Հնդ. օվկ–ի ափին: Բն.՝ 1,58 մլն (2010): Կան սննդի, թեթև արդ–յան և այլ ձեռնարկներ: Հիմնադրել են արաբ և պարսիկ առևտրականները XII դ–ում: 1905–60–ին եղել է Իտալ. Սոմալիի վարչ. կենտրոնը:

ՄՈԳԱԿԱՆ ՄԻՋՈՒԿՆԵՐ, ատոմ. միջուկներ, որոնցում պրոտոնների և նեյտրոնների թիվը հավասար է այսպես կոչված մոգ. թվերին (2, 8, 20, 50, 82, 126): Քիմ. տարրերի պարբեր. աղյուսակի հարևան միջուկներից տարբերվում են բարձր կայունությամբ և մեծ տարածվածությամբ բնության մեջ:

ՄՈԳԱԿԱՆ ՌԵԱԼԻԶՄ, հոսանք XX դ–ի եվրոպ. ու ամերիկ. արվ–ում և գրկ–յան մեջ. միավորել է ֆանտաստիկ. ու առասպել. տարրերը և ռեալիստ. միջոցները: Եզրույթը ներմուծել է գերմանացի քննադատ Ֆ. ***Ռոհը*** 1925–ին՝ գեղանկարչ. ոճը բնութագրելու համար: Գեղանկարչության մեջ արվ–ի այն ոճն է, որտեղ մոգ. տարրերը պատկերվում են որպես իրական պատկերներ: Գրկ–յան մեջ տարածվել է Լատ. Ամերիկայում (Ա. Կարպենտյեր, Գ. Գարսիա Մարկես, Կ. Ֆուենտես, Մ. Վարգաս Լյոսա, Պ. Կոելյո և ուր.), հանդիպում է նաև տեսող. արվ–ում, որտեղ համակցվում են իրականն ու ոչ իրականը, մտացածինն ու խորհրդավորը:

ՄՈԳԱԿԱՆ ՔԱՌԱԿՈՒՍԻ, հավասար թվով n սյունակների և տողերի բաժանված քառակուսի աղյուսակ, որի վանդակներում գրված n^2 բնական թվերի գումարը՝ ըստ յուրաքանչյուր սյունակի, տողի և 2 մեծ անկյունագծերի, նույն թիվն է: n–ը կոչվում է Մ. ք–ու կարգ: Նկ–ում Մ. ք–ու օրինակ է, երբ n = 3: Գումարը՝ 15:

4	9	2
3	5	7
8	1	6

ՄՈԳԵՐ, քրմ. դաս հին Պարսկաստանում, ***զրադաշտականության*** մեջ՝ քուրմ: Մ. գործածվում է նաև կախարդ, գուշակ, աստղագետ (այստեղից՝ «մոգություն» հասկացությունը):

ՄՈԳԵՐՆԵՐ (Mogera), խլուրդների սեռ: Մարմնի երկ.՝ 17–20 *սմ*: Հայտնի է 3 տեսակ՝ Արլ. Ասիայի հվ–ում, այդ թվում՝ ՌԴ Պրիմորիեի երկրամասում: Ճապոն. կամ միջին Մ. պահպանվում է:

ՄՈԴ, 1. (ֆիզ.) տատանումների տեսակ (նորմալ տատանումներ) տատանող. համակարգերում, կամ ալիքների տեսակ (նորմալ ալիքներ) ալիքատար. համակարգերում և ալիք. փնջերում: «Մ.» եզրույթն օգտագործվում է նաև որոշակի տարած. կառուցվածքով (համաչափությամբ) ցանկացած ալիք. դաշտի համար (նրա աղբյուրից դուրս): Ներկայում օգտագործվում են լազերի ճառագայթման Մ., «հոսող» Մ., մակերևութ. Մ., ցուցչային Մ., նվազման Մ., կապված Մ. ևն: 2. **Վիճակագրության մեջ**, հայտանիշի (տարբերակի) մեծություն, որն ավելի հաճախ հանդիպում է միավորների համախմբի կամ վարիացիոն շարքի մեջ (օր.՝ հագուստի առավել մեծ պահանջարկ ունեցող չափ):

ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ 1. իրական առարկաների և շարժընթացների ու կառուցվող օբյեկտների հետազոտումը՝ դրանց մոդելների պատրաստման և ուսումնասիրման եղանակով: Մ–ման վրա, ըստ էության, հիմնվում է ԳՀ յուրաքանչյուր մեթոդ՝ տես. (որի դեպքում կիրառվում են տարբեր տեսակի նշան., վերաց. մոդելներ) և փորձարար. (օգտագործվում են առարկայական մոդելներ): 2. (Կենսբ.) մոդելների օգնությամբ կենսբ. կառուցվածքների, գործողությունների և կենսընթացների ուսումնասիրությունը կենդանի օրգանիզմի տարբեր մակարդակներում (մոլ., ենթաբջջ., բջջ., օրգ. ևն): Կիրառվում են Մ–ման տարբեր տեսակներ. մի դեպքում մարդու կամ կենդանու օրգանիզմի մոդելը փորձակենդանին է (շուն, առնետ, կապիկ), որի միջոցով վերարտադրվում են որոշակի վիճակներ կամ հիվանդություններ, որը հնարավորություն է տալիս փորձնականորեն ուսումնասիրելու տվյալ վիճակի կամ հիվանդության մեխանիզմը և ներ–

գործելու նպատակահարմար ձևով: Մեկ այլ դեպքում ֆիզ. կամ քիմ. միջոցներով վերարտադրվում են կենսբ. կառուցվածքներ, գործողություններ, շարժընթացներ: Մ., որպես կանոն, մոդելավորվող կենսբ. երևույթի մոտավոր նմանակն է:

ՄՈԴԵԼԻԶՄ (մարզ.), թռչող սարքերի, ավտոմոբիլների, նավերի, լոկոմոտիվների նկի շարժվող մոդելների նախագծում, պատրաստում և փորձարկում մարզ. նպատակներով:

ՄՈԴԵՄ [< անգլ. mo (dulator) և dem (odulator)], ազդանշանների մոդուլման և ապամոդուլման սարք տվյալների ինքնաշխատ հաղորդման համակարգերում: Ընդհատուն ազդանշանները փոխակերպում է անընդհատ մոդուլված ազդանշանների՝ կապի գծերով դրանք հաղորդելու համար, և կատարում է հակառակ փոխակերպում՝ ընդունման ժամանակ, նաև կառավարում է տեղեկույթի հոսքի տեղաբաշխումը համակարգիչների միջև, օր.՝ համակարգչ. ցանցում:

ՄՈԴԵՆԱ (Modena) Գուստավո (1803–1861), իտալացի դերասան: Ղեկավարել է սեփ. թատերախմբերը: Մ–ի հերոս., ռոմանտիկ. վեհ արվ–ը ձևավորվել է ազգ–ազատագր. շարժման գաղափարների ազդեցությամբ (1831–ի Բոլոնյան ապստամբության մասնակից): Աշակերտներից են S. Սալվինին, Է. Ռոսսին:

ՄՈԴԵՌՆԻԶՄ (ֆրանս.՝ moderne – ժամանակակից, նորագույն), հավաք. հասկացություն, գեղ. երևույթ XIX դ–ի 2–րդ կես–XX դ–ի 1–ին կեսին գրկ–յան մեջ և արվ–ում: Մ–ի ձգտումը դաս. գրկ–յան ավանդույթներին հակադրվելն էր, նոր գեղ. ձևեր ստեղծելը, գեղ. լեզուն, խոսքը բարեփոխելը: Մոդեռնիստ. միտումներն արտահայտվել են ***իմպրեսիոնիզմի***, ***նեոկլասիցիզմի***, ***նեոռոմանտիզմի***, ***պոստմոդեռնիզմի***, ***սիմվոլիզմի*** մեջ: Մ–ի ավելի արմատ. ձևն ***ավանգարդիզմն*** է, որը վերանայել է ոչ միայն արվ–ի լեզուն, այլ նաև նրա ընդհ. սկզբունքներն ու խնդիրները: 1950–ական թթ–ի վերջին ձևավորվել է Մ–ին հակադրվող պոստմոդեռնիստ. ուղղությունը: Նեղ իմաստով՝ ուղղություն ճարտ–յան մեջ XX դ–ի կեսին:

ՄՈԴԻԱՆՈ (Modiano) Պատրիկ (ծ. 1945), ֆրանսիացի գրող: Հեղինակ է «Աստղի հրապարակը» (1968), «Գիշերային պահակախումբը» (1969), «Կորուսյալ թաղամաս» (1984) վեպերի, «Բուլվարների օղակը» (1972), «Մութ կրպակների փողոցը» (1978), «Օգոստոսյան կիրակիներ» (1986), «Ծաղիկներ՝ ավերակների վրա» (1991), «Տոհմաբանություն» (2004, ինքնակենսագրություն), «Կորած երիտասարդության սրճարանում» (2007, հայ.՝ 2014), «Հորիզոն» (2010), «Գիշերային խոտ» (2012), «Որ չկորչես թաղամասում» (2014, հայ.՝ 2015) և այլ վիպակների:

Ֆրանսիայի ակադ–ի (1972), Գոնկուր–յան (1978), Նոբելյան (2014) մրց–ներ:

ՄՈԴԻԼԻԱՆԻ (Modigliani) Ամեդեո (1884–1920), իտալացի գեղանկարիչ, քանդ.: 1906–ից՝ Փարիզում: Դեկորատիվ հարթությամբ, կոմպոզիցիաների լակոնիկությամբ, նրբաճաշակ ստվերանկարների և գույների միջոցով ստեղծել է մտերմիկ փխրուն կերպարների առանձնահատուկ աշխարհ («Էլվիրա», 1919): Քանդ–յան մեջ ձգտել է երկարավուն համաչափությունների, ձևերի երկրաչափականացման:

ՄՈԴԻԼԻԱՆԻ Ֆրանկո (1918–2003), իտալացի հրեա տնտեսագետ: 1939–ից՝ Ֆրանսիայում, ապա՝ ԱՄՆ–ում: Հետազոտությունները վերաբերում են էկոնոմետրիայի ընագավառին: Նոբելյան մրց. (1985):

ՄՈԴՍԼԻ (Maudsley) Հենրի (1835–1918), անգլիացի հոգեբույժ և փիլ–պոզիտիվիստ: Մանկ. հոգեբուժության և հոգեբուժության մեջ էվոլյուցիոն ուղղության հիմնադիրներից:

ՄՈԴՐԵԿԻԼԻ Միքայել, X դ–ի վրացի գրերաժշտ. գործիչ, Տայքի վրացաղավան վանական: Համակարգել է Վրաստանում իր հավաքած եկեղեց. (բուն վրաց. և հունից թարգմանված) հիմները, ամփոփել ժող–ում (որոշ տվյալներով՝ 994–1001–ին Տայքում արտագրվել է ավելի քան 500 նմուշ): Հիմների 2/3–ը պարունակում է նոտագրության նշաններ, որոնք արտաքուստ նման են IX դ–ի հայկ. խազերին (ինքնատիպ գործադրությամբ):

ՄՈԴՈՒԼ, (լատ.՝ modulus – չափ), 1. **ատամնանվի**, անվի ատամների քայլի (հարևան ատամների համապատասխան կետերի հեռ–յունը՝ չափված շրջանագծի աղեղով) և π թվի հարաբերությունը: Ատամնանիվների երկրչփ. չափերն ընտրում են չափորոշված մոդուլին համեմատական: 2. Թվի բացարձակ ***մեծությունը***: 3. Մ. թվի, լոգարիթմների a հիմքից b հիմքով համակարգին անցման Մ.՝


$$M = 1/\log_a b$$ թիվն է:

4. **Ռադիոէլեկտրոնիկայում**, միասնականացված հանգույց կամ բարդ համակարգի մաս, որը կառուցվածքորեն ձևավորված է որպես ինքնուրույն պատրաստվածք և տեխ. սարքավորումներում կատարում է որոշակի գործառույթներ:

5. Ճարտ. և շին. պայման. չափ, որին բազմապատիկ են շենքի (համալիրի) և նրա առանձին մասերի չափերը: Կառույցի համար որպես Մ. կարող են ընտրել նրա հիմն. չափումներից մեկը (գմբեթի տրամագիծը կամ կողմերից մեկը): Հայկ. միջնադար. գմբեթավոր կառույցների Մ. հիմնականում ընդունվել է գմբեթային քառակուսու 1/n մասը, երբեմն՝ նաև երկյան որևէ չափ:

ՄՈԴՈՒԼՆԵՐ ԱՌԱՋԳԱԿԱՆՈՒԹՅԱՆ, առաձգականության հաստատուններ, պինդ մարմինների առաձգ. հատկությունները բնութագրող մեծություններ. համեմատականության գործակիցներ են՝ դեֆորմացիայի կախումը կիրառված մեխ. լարումներից (և հակառակը) նկարագրող առնչություններում: Առաձգ. մարմնի փոքր դեֆորմացիաների համար այդ կախումը գծային է (***Հուկի օրենք***): Անիզոտրոպ բյուրեղների համար Մ. ա–յան թիվը հասնում է 21–ի և կախված է բյուրեղի համաչափությունից: Իզոտրոպ նյութի առաձգ. հատկությունները նկարագրվում են 2 հաստատուններով (տես ***Լամեի հաստատուններ***), որոնք կապված են E ***Յունգի մոդուլի***՝ E = s/e (s– ձգող լարում, e– հարաբեր. երկարացում), u ***Պուասոնի գործակցի***՝ u = $|e_y| / e_x$ (e_y– հարաբեր. լայնական սեղմման բացարձակ արժեքն է, e_x– հարաբեր. երկայն. երկարացումը), G սահքի մոդուլի՝ G = t/g (g– սահքի անկյունը, t– շոշափող լարումը) և K ծավալ. սեղմման մոդուլի՝ K = P /D (P– ճնշումը, D– հարաբեր. ծավալ. սեղմումը) հետ: Տվյալ նյութի Մ. ա. կախված են նրա քիմ. բաղադրությունից, նախն. մշակումից, ջերմաստիճանից ևն:

ՄՈԴՈՒԼՈՒՄ (լատ.՝ modulatio – չափ), 1. ժամանակի ընթացքում որևէ կանոնավոր ֆիզ. շարժընթաց բնութագրող մեծության փոփոխությունը՝ ըստ տրված օրենքի: Գործն. նշանակություն ունի տատանումների Մ.: 2. **Լույսի Մ.**, լուս. ալիքների բնութագրերի՝ ամպլիտուդի (ինտենսիվության), հաճախության, փուլի, բևեռացման փոփոխումը՝ տեղեկույթի հաղորդման կամ որոշակի հատկություններով լուս. հոսքի ստեղծման նպատակով: 3. **Տատանումների Մ.**, տատանումների ամպլիտուդի, հաճախության, փուլի կամ այլ բնութագրերի փոփոխումն այդ տատանումների պարբերության համեմատությամբ դանդաղ փոփոխվող որոշակի օրենքով: Լինում են **ամպլիտուդային, հաճախային և փուլային**: Կիրառում են էլեկտրամագնիս. ալիքների միջոցով տեղեկույթ հաղորդելու համար:



Տատանումների մոդուլում (վերից վար). ամպլիտուդային, հաճախային և ամպլիտուդա–փուլային (S – ամպլիտուդ, t – ժամանակ)

ՄՈԴՈՒՍ (լատ.՝ modus), 1. տեսակ, գոյության եղանակ: 2. Փիլ. հասկացություն, որով նշվում են առարկայի այն հատկությունները, որոնք որոշակի վիճակներում բնորոշ են միայն նրան՝ ի տարբերություն ատրիբուտի, որն առարկայի անբաժանելի հատկությունն է: 3. (Տրամաբ.) մտահանգման (սիլլոգիզմ) տարատեսակներ, որոնց բնորոշ են քանակը, ձևը և նախադրյալների ու եզրակացության փոխկապակցվածությունը: 4. (Երաժշտ.) լադ (ձայնակարգ), ռիթմիկ բանաձև, հուզ. համակարգ:

ՄՈՌԵՄ (Maugham) Ուիլյամ Սոմերսեթ (1874–1965), անգլիացի գրող: Հեղինակ է «Լամբեթցի Լիզան» (1897), «Լուսին և վեցպենսանոց» (1919, հայ.՝ 1976), «Ստրկություն մարդկային» (1915, հայ.՝ հ. 1–3, 1958–59, 1965) հոգեբ. վեպերի, «Էշենդենը կամ Բրիտանական գործակալը» (1928) և այլ նովելների ժող–ների, «Լեդի Ֆրեդերիկ» (բեմ.՝ 1907) և այլ պիեսների:

ՄՈԶԱՄԲԻԿ (Moçambique), **Մոզամբիկի Հանրապետություն**, պետություն Աֆրիկայի հվ–արլ–ում: Պորտուգալիայի նախկին գաղութը: Անկախ է 1975–ից: Սահմանակից է Տանզանիային, Մալավիին, Զամբիային, Զիմբաբվեին, ՀԱՀ–ին և Սվազիլենդին: Արլ–ից ողողվում է Հնդ. օվկ–ի ջրերով: Տարածքը՝ 801,6 հզ. *կմ*^{2}: Բն.՝ 25,8 մլն (2015): Վարչականորեն բաժանված է 11 պրովինցիայի: Մայրաքաղաքը՝ ***Մապուտու***: Պետ. կարգը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ ԱԺ–ն:

Անդամակցում է Ազգերի համագործակցությանը, պուրտուգալալեզու երկրների միությանը: Պետ. լեզուն՝ պորտուգ.: Հավատացյալների մեծ մաը կաթոլիկ է, կան նաև մահմեդականներ, բողոքականներ, սինկրետյան մշակույթի և ավանդ. հավատալիքների հետևորդներ: Դրամ. միավորը՝ մետիկալ: Արտահանում է ալյումին, բամբակ, շաքար, ցիտրուսներ, փայտանյութ, ծովախեցգետին ևն, ներմուծում մեքենաշինության, տրանսպորտի միջոցներ, վառելանյութ, քիմ. արտադրանք, սննդամթերք, տեքստիլ: Աշխարհի ամենաաղքատ երկրներից է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով մոտ 900 ԱՄՆ դոլար է (2009):

Մ–ի հնագույն բնակիչները եղել են բուշմեններն ու հոտենտոտները, որոնց հետագայում դուրս են մղել Սուդանի հվ–ից գաղթած բանտու ցեղերը: VIII դ–ում Մ. են ներթափանցել արաբները: Մ. թ. I հզ–ամյակի վերջ–II հզ–ամյակի սկզբին Մ–ի տարածքում կազմավորվել են մի քանի պետություններ (ամենամեծը՝ Մոնոմոտապա): XVI դ–ում Մ. են ներխուժել պորտուգալացիները և գաղութացրել այն (Մ–ի ներքին շրջանների գաղութացումն ավարտվել է XX դ–ի սկզբին): 1964–ին Մ–ում սկսվել է զինված ապստամբություն՝ ***Մոզամբիկի ազատագրության ճակատի*** ղեկավարությամբ: Պորտուգալիայում բռնատիր. վարչակարգի տապալումից (1974) հետո, 1975–ի հունիսի 25–ին, Մ. Պորտուգալիայի կառ–յան համաձայնությամբ հռչակվել է անկախ պետություն (նախագահ՝ Սամորա Մաշել): Ընտրվել է սոցիալիզմի կառուցման ճանապարհը, հաստատվել է միակուս. համակարգ: Մինչև 1992–ը երկրում տեղի են ունեցել քաղաքաց. պատերազմներ: 1994–ին ներդրվել է բազմակուս. համակարգ, սկսվել են տնտ–յան շուկայական բարեփոխումներ: ՖՐԵԼԻՄՈ–ն պահպանում է առաջատար դիրքերը երկրի քաղ. կյանքում:

ՄՈԶԱՄԲԻԿԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏ (Frente de Libertagão de Moçambique, FRELIMO–ՖՐԵԼԻՄՈ), քաղ. կազմ–յուն ***Մոզամբիկում***: Ստեղծվել է 1962–ին՝ Պորտուգալիայից Մոզամբիկի անկախության նպատակով, որին հասել են 1964–74–ի պատերազմների արդյունքում: 1977–ից՝ կուս–յուն: 1994–ին հաղթել է 1–ին բազմակուս. ընտրություններում: Կուս–յան առաջնորդները դարձել են հանրապետության նախագահ (Ժ. ***Չիսսանո***, Ա. ***Գեբուզա***՝ 2005–ից):

ՄՈԶԱՄԲԻԿԻ ՆԵՂՈՒԹՅՈՒՆ, Աֆրիկայի և Մադագասկարի միջև: Երկ.՝ 1760 *կմ*, նվզգն լայն.՝ 422 *կմ*, նվզգն խոր. նավարկուղում՝ 117 *մ*:

ՄՈԶԳՈՎ Իվան Եֆիմովիչ (1906–1990), ռուս. անասնաբույժ–դեղաբան: Պրոֆ. (1939): ՀամԳԳԱ ակադ. (1956): Աշխ–ները վերաբերում են կենդանիների վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների՝ դեղանյութերով կանխարգելման, ածի խթանման ու մթերատվության բարձրացման հարցերին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1981):

ՄՈԶԴՈԿ, ք. ՌԴ–ում՝ Հս. Օսիա–Ալանիայում՝ Թերեքի ափին: Համանուն շրջանի վարչ. կենտրոնը: Հիմնադրվել է 1763–ին: Բն.՝ 40 հզ. (2015): Կան սննդի, մսի վերամշակման ձեռն–ներ, վարագույրի ֆաբրիկա («Մոզդոկյան նախշեր») ևն:

1763–ին՝ հիմնադրումից հետո Եկատերինա II կայսրուհու հրամանով, Մ. են տեղափոխվել 2 հզ–ից ավելի հայեր (հիմնականում՝ Ղզլարից): 1778–ին կառուցվել է 1–ին հայկ. եկեղեցին, 1849–ին բացվել է հայկ. ծխ. դպրոց: Հայերին թույլատրվել է ունենալ դատարան: Տրվել են նաև առևտր. արտոնություններ: Հայերն զբաղվել են արհեստներով, այգեգործությամբ, եղել են մետաքսի հիմն. արտադրողները, տիրել են մոմաճուղ. գործարանների մեծ մասին: XIX դ–ի 1–ին կեսին ցար. կառ–յունը սահմանափակել է հայերի իրավունքները, վերացրել դատարանը: 1794–ին Մ–ում կային հայկ. 2 եկեղեցի, քաղաք. ուսումնարան, նաև մշակութ. և հաս. կազմ–յուններ: Վերջին տվյալներով (2010)՝ Մ–ում բնակվում է շուրջ 2,5 հզ. հայ: Քաղաք. իշխանություններում կան հայեր: Հայ համայնքը գործում է որպես ՌՀՄ–ի մասնաճյուղ (նախագահ՝ Ռաֆիկ Վարդանով): Հայկ. եկեղեցու բակում կանգնեցվել է Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշաքար:

ՄՈԶԵԼ (ֆրանս.՝ Moselle, գերմ.՝ Mosel), գետ Ֆրանսիայում, Լյուքսեմբուրգում, Գերմանիայում, Հռենոսի ձախ վտակը: Երկ.՝ 545 *կմ*, ավազանը՝ 28,2 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 290 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է: Ջրանցքներով միացած է Մառն և Սոն գետերին: Ափին են Մեց, Տրիր, գետաբերան. հատվածում՝ Կոբլենց ք–ները:

ՄՈԶԵՐ (Moser) Էդվարդ Ինգոլդ (ծ. 1962), նորվեգացի հոգեբան, նյարդաֆիզիոլոգ: Հետազոտությունները վերաբերում են գլխուղեղում տարած. կողմնորոշման մեխանիզմներին: 2002–ին կնոջ՝ Մ–Բ. Մոզերի (ծ. 1963) հետ ստեղծել է Հիշողության կենսբ–յան կենտրոն, 2007–ին՝ Կավլի համակարգ. նյարդաբանության ինստ–ը: Նորվեգիայի. թագավոր. ընկ–յան, Նորվեգիայի, Նորվեգիայի տեխնոլոգ. ԳԱ–ների անդամ, ԱՄՆ ԳԱԱ արտ. թղթ. անդամ:

Նոբելյան մրց. (2014, Մ–Բ. Մոզերի և Ջ. *Օ'Կիֆի* հետ):

ՄՈԶԵՐ (Tabanidae), կարճաբեղիկ երկթևանիների ենթակարգի արյունածուծ միջատների ընտանիք: Մարմինը կարճ է (երկ.՝ 7–30 *մմ*), թևերը՝ լայն, ամուր: Ունեն մեծ գլուխ, ֆասետային աչքեր: Կան ջր., կիսաջր. կենսակերպի, հողում ապրող տեսակներ: ՀՀ–ում առավել տարածված են ջերմասեր, Պորչինսկու, լեռն., մոխրագույն Մ.: Խայթոցները հյուծում են գղտ. կենդանիներին: Տարածում են նաև վարակիչ հիվանդություններ (տուլարեմիա, սիբիրյան խոց ևն):

ՄՈԶԵԼԻ (Moseley) Հենրի Գվին Ջեֆրիս (1887–1915), անգլիացի ֆիզիկոս, ռենտգենասպեկտրադիտման հիմնադիրը: Է. ***Ռեզերֆորդի*** լաբորատորիայում (Մանչեստր) կատարել է բետա, գամմա ու ռենտգեն. ճառագայթների սպեկտրադիտումներ: Բացահայտել է (1913) ռենտգեն. ճառագայթներին բնորոշ գծերի հաճախությունների ու տարրի ատոմ. համարի միջև կապը (***Մոզլիի օրենք***):

ՄՈԶԼԻԻ ՕՐԵՆՔ, քիմ. տարրի ռենտգեն. բնութագր. ճառագայթման սպեկտր. գծերի հաճախության քառակուսի արմատը գծայնորեն կախված է այդ քիմ. տարրի ատոմ. կարգաթվից: Փորձով հաստնաբերել է Հ. ***Մոզլին*** 1913–ին: Մ. օ. ռենտգեն. սպեկտր. վերլուծության հիմքն է:

ՄՈԹԱԼ, 1. մատղաշ անասունի մազը հեռացրած կաշի: 2. Պանրի տեսակ, որը պահվում է մոթալե տկի մեջ:

ՄՈԺԱԵՎ Բորիս Անդրեևիչ (1923–1996), ռուս գրող: Հեղինակ է «Ֆեոդոր Կուզկինի կյանքից» (1966, վիպակ, հետագա հրտ–յունները՝ «Ժիվոյ», պատմվածքներ), «Տղամարդիկ և կանայք» (գիրք 1, 2, 1976, 1987) վեպ–տարեգրության, «Օտարը» (մաս 1, 1993) վեպի, նաև կինոսցենարների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1989):

ՄՈԺԱԵՎԱ Գալինա Նիկոլաևնա (1929–2015), բջջաբան, կենսաֆիզիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1994): Հետազոտությունները վերաբերում են բջջաթաղանթների իոն. խողովակներին և բջջի մակերևույթից դեպի ներբջջ. կառուցվածքներն ազդանշանների փոխանցման մեջ նրանց դերին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1985):

ՄՈԺԱՅՍԿԻ Ալեքսանդր Ֆեոդորովիչ (1825–1890), ռուս հետազոտող և գյուտարար, դերծովակալ (1886): Իր հնարած «օդագնաց սարքի» (ինքնաթիռի) համար 1881–ին Ռուսաստանում թռչող սարքի առաջին արտոնագիրն է ստացել: 1885–ի հուլիսի 2–րդ կեսին նրա ձեռնարկած ինքնաշեն մոնոպլանով թռիչքի փորձն անհաջող է ավարտվել:

ՄՈԻՍԵԵՆԿՈ Եվսեյ Եվսեևիչ (1916–1988), ռուս. գեղանկարիչ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1963): ԽՍՀՄ (1970) ժող. նկարիչ: ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի անդամ (1973): Սոց. աշխ. հերոս (1986): Ռոմանտիկ., արտահայտիչ նկարներ է ստեղծել քաղաքաց. պատերազմի և ՀՄՊ–ի թեմաներով («Մարտական տարիներ», «Հիշողություն», շարք):

Լենինյան (1974), ԽՍՀՄ Պետ. (1983) մրց–ներ:

ՄՈԻՍԵԵՎ, Իլյա Իոսիֆովիչ (ծ. 1929), ռուս ֆիզքիմիկոս: ՌԳԱ ակադ. (1992): Աշակել է ածխաջրածինների փոխարկումների բարձր արդյունավետ կատալիզորդներ: ՌԴ Պետ. մրց. (2002):

ՄՈԼ, (Mohl) Հուգո (1805–1872), գերմանացի բուսաբան, բույսերի բջջաբանության հիմնադիրներից: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1854): Ներմուծել է (1844–46) «պրոտոպլազմա» հասկացությունը և արտահայտել է բջջի կյանքում նրա դերի մասին ենթադրություն: Նկարագրել է բջջի կիսումը, առաջարկել բույսերի հյուսվածքների դասակարգում:

ՄՈԼ, նյութի քանակի միավոր ՄՄՀ–ում: 1Մ պարունակում է այնքան կառուցվածք. տարր, որքան կա ածխածնի ^{12}C նուկլիդի՝ 0,012 *կգ*–ի մեջ, այսինքն՝ $6{,}022 \cdot 10^{23}$: Ընդունվել է ***գ–մոլեկուլի*** փոխարեն:

ՄՈԼԱԳԱՐ, **մանիակ** (ֆրանս.՝ maniaque, հուն.՝ mania – խելացնորություն, զմայլանք, մոլություն), որևէ մոլությամբ համակված մարդ:

ՄՈԼԱԽՈՏԵՐ, բույսեր, որոնց ածը մշակարույսերի ցանքերում և այլ տարածքներում անցանկալի է, նվազեցնում են բերքը: Հայտնի է մի քանի հզ. տեսակ, ՀՀ–ում՝ 850: Մ–ի դեմ պայքարում են հերբեցիդներով:

ՄՈԼԱՍՈՐԳՈ (Sorghum holepense), **Ջոնսոնի խոտ, Հալեպի խոտ**, դաշտավլուկազգիների (հացազգիներ) ընտանիքի բազմամյա, կոճղարմատավոր մոլախոտ. բույս: ՀՀ–ում տարածված է Արարատյան դաշտի և նախալեռն., նաև Քանգեզուրի և Վայքի գոտիներում: Աղբոտում է հիմնականում շարահերկ, բանջարաբոստան. մշակարույսերի ցանքերը, խաղողի այգիները:

ՄՈԼԴՎԱՎԵՐԵՆ, ***մոլդավների*** լեզուն, Մոլդովայի պետ., Մերձդնեստրյան Մոլդ. Հանրապետության պետ. լեզուներից: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտա-

նիքի ռոման. խմբին: Գրի հիմքում սլավն. կիրիլիցան (մինչև XIX դ–ը), ռուս. (XIX դ–ից), լատ. (1932–39), ապա ռուս. (1939–ից) այբուբենն է:

ՄՈԼԴԱՎԱՆԵՐ (ինքնանվանումը՝ մոլդովենն), արլ–ռոման. ժողդ, Մոլդովայի հիմն. բնակչությունը (2,7 մլն, 2007): Ապրում են նաև Ուկրաինայում (258,6 հզ., 2001), ՌԴ–ում (172,3 հզ., 2002), Իտալիայում (90 հզ., 2009), Պորտուգալիայում (21,1 հզ., 2008), Ղազախստանում (19,5 հզ., 1999) ևն: Լեզուն՝ մոլդավերենն: Հավատացյալները ուղղափառ քրիստոնյա են:

ՄՈԼԴՈՎԱ, պետություն Արլ. Եվրոպայում: Սահմանակից է Ուկրաինային և Ռումինիային: Տարածքը՝ 33,8 հզ. *կմ*^{2}, բն.՝ 3,56 մլն (2010): Մայրաքաղաքը՝ *Քիշնև*: Պետ. լեզուն՝ մոլդ.: Կառավարման ձևը՝ խորհրդարանահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Հավատացյալների մեծ մասն ուղղափառ է: Բաժանված է 32 վարչ. շրջանների, 5 մունիցիպայի և 2 ինքնավար տարածք. կազմավորման (Գագաուզիա և Մերձդնեստրյան Մոլդ. Հանրապետություն, որի կարգավիճակը դեռևս անորոշ է): Անդամակցում է ՄԱԿ–ին, ԱՊՀ–ին, ԵԱՀԿ–ին, ԵԽ–ին ևն: Անցումային տնտեսամբ երկիր է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 2,3 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է պարեն. ապրանքներ, գինի, մեքենաներ և սարքավորումներ, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ մոլդ. լեյ:

Մոլդ. իշխանությունն առաջացել է 1359–ին: Մոլդավները մշտապես պայքարել են թուրքերի, թաթարների, լեհերի և հունգարների դեմ: 1456–ին Մ. առաջին անգամ հարկ է տվել Թուրքիային, XVI դ–ից՝ ավելի քան 300 տարի շարունակ: XVIII դ–ում ռուս–թուրք. պատերազմների ժամանակ ռուս. զորքերը 3 անգամ (1739, 1770–74, 1788–91) ազատագրել են Մ.: 1791–ի Յասսիի հաշտության պայմանագրով Ռուսաստանին է անցել ձախափնյա (Դնեստրի) Մ–ի մի մասը, 1812–ի Բուխարեստի հաշտության պայմանագրով՝ Պրուտ և Դնեստր գետերի միջև ընկած տարածքը՝ Բեսարաբիան: 1918–ին Մ–ում հաստատվել է խորհրդ. իշխանություն, Բեսարաբիան միացել է Ռումինիային, մնացած մասում կազմավորվել է Մոլդ. ԽՍՀ–ն՝ Ուկր. ԽՍՀ–ի կազմում: Իսկ 1940–ին Բեսարաբիան ներառվել է ԽՍՀՄ–ի կազմում, և կազմավորվել է Մոլդ. ԽՍՀ–ն: 1941–44–ին Մ. բռնագրավել են գերմ. զորքերը: 1944–ին ազատագրել է խորհրդ. բանակը: 1991–ից Մ. անկախ պետություն է: 1990–ից Մ–ի տարածքում կազմավորվել է ինքնահռչակ Մերձդնեստրյան Մոլդ. Հանրապետությունը: 1992–ին Մ. փորձել է զենքի ուժով տարածքի վրա վերահսկողություն հաստատել. տեղի են ունեցել զինված բախումներ, բայց ապարդյուն: 1990–ին անկախություն հռչակած Գագաուզիան 1994–ի հանրաքվեով որոշել է մնալ Մ–ի կազմում՝ ինքնավար տարածքի կարգավիճակով: 2001–09–ին երկրի իշխանության ղեկին էր Մ–ի կոմկուսը, 2009–ից աջերի և կենտրոնամետ կուսյունների դաշինքն է:

VI դ–ի վերջին և VII դ–ի սկզբին բազմաթիվ հայեր Բյուզանդիայի կայսրերի հրամաններով վերաբնակեցվել են Բալկանյան թ–կղզում և Մ–ում: Հայերի հոսքը Մ. շարունակվել է նաև հետագայում, սակայն զանգված. բնույթ է ստացել 1060–ական թթ–ից, երբ թուրք սելջուկները նվաճել են Բագրատունիների հայկ. թագավորությունը: 1359–ին Մոլդ. իշխանության կազմավորումից հետո հիմնվել են հայկ. կենտրոններ: 1401–ին Մ–ի մայրաքաղաք Սուչավայում ստեղծվել է առանձին հայոց թեմ՝ իր եպս–ով: 1792–ին հայերը հիմնադրել են Գրիգորիուպոլիս ք.: Մ–ի հայ գաղութն օգտվել է արտոնություններից. ունևոր դասին իրավունք է տրվել զբաղեցնելու պետ. պաշտոններ, կրելու ազնվական. տիտղոսներ: ԵՀՊ–ից և Մ–ում խորհրդ. իշխանության հաստատումից հետո Մ–ի հայ համայնքների բնակչության թիվը նվազել է, ազգ. կյանքն անկում է ապրել: ԽՍՀՄ–ի փլուզումից հետո, 1990–ական թթ–ի սկզբին, սկսվել է Քիշնևի, մասամբ՝ նաև Գրիգորիուպոլսի հայ համայնքների վերածնունդը: Ներկայում Մ–ում բնակվում է մոտ 9–12 հզ. հայ՝ միավորված հայկ. համայնքում (նախագահ՝ Վլենեբա Գասպարյան, 2009–ից): Գործում են Քիշնևի Սբ Աստվածածին եկեղեցին, կիրակնօրյա դպրոցը, «Անի» հայ մշակույթի կենտրոնը, Գրիգորիուպոլսի «Վերածնունդ» բարեգործ. միությունը ևն:

ՄՈԼԵԽԻՆԴ (Cihuta), **խնդամոլի, խնդակոթ**, նեխուրազգիների (հովանոցավորներ) ընտանիքի բազմամյա ջրաճահճային խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 100 տեսակ, ՀՀ–ում՝ 1: Եվրոպայում տարածված Մ. թունավոր է մարդկանց և կենդանիների համար:

ՄՈԼԵԿՈՒԼ (նոր լատ.՝ molecula, < լատ. moles – զանգվածի նվազականը), նյութի փոքրագույն մասնիկը, որը պահպանում է նրա հիմն. քիմ. հատկությունները և կարող է գոյություն ունենալ ինքնուրույն: Մ. քիմ. կապերով միացած ատոմների խումբ է: Տարբեր նյութերի Մ–ները տարբերվում են որակ. և քանակ. բաղադրությամբ, զանգվածով, կառուցվածքով, ատոմների փոխադարձ դասավորությամբ, ատոմների միջև քիմ. կապի բնույթով ու հատկություններով: Մ–ի զանգվածը սովորաբար 10^{-24} *գ*–ի կարգի մեծություն է, սակայն բնության մեջ կան նյութեր (կաուչուկ, թաղանթանյութ, սպիտակուցներ), որոնց Մ–ները շատ մեծ են (բաղկացած են հազարավոր կամ միլիոնավոր ատոմներից): Այդպիսի Մ–ները կոչվում են **մակրոմոլեկուլներ:** Նյութի մոլ. կառուցվածքը հաստատվում է ռենտգենակառուցվածք. վերլուծության, էլեկտրոնագրության, զանգվածսպեկտրադիտության, ԷՊՌ–ի, ՄՄՌ–ի և այլ եղանակներով:

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ (ՄԿՏ), նյութի կառուցվածքի տեսություն, որը հիմնված է հետևյալ կանխադրույթների վրա. նյութը կազմված է մանրագույն մասնիկներից, դրանք շարժվում են քաոսային և միմյանց հետ փոխազդում են բախվելով: Այն մոտավորապես բացատրում է նոսրացված գազի թերմոդինամիկ. և կինետիկ. հատկությունները (վիճակի հավասարում, մածուցիկություն, ջերմափոխանակություն, դիֆուզիա): Քվանտ. մեխանիկայի և վիճակագր. ֆիզիկայի դրույթներով կատարելագործված ժամանակակից ՄԿՏ ֆիզ. և քիմ. կինետիկայի հիմքն է:

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԲԵԿՈՒՄ, **ռեֆրակցիա**, բնութագրում է նյութի՝ լույսը բեկելու հատկությունները: Ի տարբերություն *բեկման ցուցչի*՝ Մ. բ. գործնականում կախված չէ նյութի խտությունից, ագրեգատ. վիճակից և ջերմաստիճանից: Մ. բ. նյութի մասնիկների (մոլ., իոն, ատոմ) էլեկտրոն. բևեռացվելիությունը կապում է այդ նյութի բեկման ցուցչին և հնարավորություն է տալիս բեկումնաչափային մեթոդներով ուսումնասիրելու միացությունների կառուցվածքը, որոշելու խառնուրդի կազմը ևն:

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԲՅՈՒՐԵՂՆԵՐ, կազմված են միջմոլ. փոխազդեցության, հիմնականում՝ *Վան դեր Վալսյան ուժերով* և *ջրածնային կապերով* իրար միացած մոլներից: Դրանք քվազիերկչափ (շերտավոր) և քվազիմիաչափ (շղթ.), օրգ., համալիր, տարրօրգ., երկակ (H_2O, CO_2, HCl ևն) միացություններն են, որոշ պարզ նյութեր (H_2, O_2, N_2), հալոգեններն ու կենսր. բյուրեղների մեծամասնությունը:

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԳԵՆԵՏԻԿԱ, գիտ–յուն. ուսումնասիրում է օրգանիզմների ժառանգականության և փոփոխականության հիմունքները, ինչպես նաև գենետիկ. տեղեկույթի պահպանման, փոխանցման, փոփոխման և իրականացման մոլ. մեխանիզմները: Ծագել է XX դ–ի 40–50–ական թթ–ին: Մ. գ–ի հիմն. նվաճումներն են գենի քիմ. կառուցվածքի հաստատումը (1953), օրգանիզմում ժառանգ. տեղեկույթի գրանցման և իրացման եղանակների վերծանումը, գենետիկ. ճարտարագիտյան մեթոդների մշակումը: ՀՀ–ում մոլ. գենետիկ. ուսումնասիրությունների մասին տես *Գենետիկա* հոդվածում:

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԳԵՆԵՐԱՏՈՐ, քվանտ. գեներատոր, որի ակտիվ միջավայրը մոլ. գազերն են (օր.՝ CO_2, N_2): Օգտագործում են հիմնականում սպեկտրադիտման սարքերում՝ *սմ*–ային և *մմ*–ային ալիքների տիրույթներում:

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՄԵԹՈԴ, նյութի հատկությունների մոդելավորման համակարգչ. մեթոդ, որը հիմնված է այդ նյութը կազմող մասնիկների շարժումների հավասարումների թվային լուծման վրա: Հնարավորություն է տալիս տասնյակ հազար մասնիկներից բաղկացած համակարգի համար հաշվարկել նրանց հետագծերը՝ մինչև մի քանի *մկվ* ժամանակահատվածում: Օգտագործում են ատոմամոլ. համակարգի հատկությունների մոդելավորման համար՝ կենսաքիմիայում, պինդ մարմնի ֆիզիկայում և հեղուկների դինամիկայում:

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԵՎ ԱՏՈՄԱՅԻՆ ՓՆՋԵՐ, վակուումում շարժվող և միմյանց ու մնացորդ. գազի մոլ–ներին գործնականում չբախվող մոլ–ների ու ատոմների ուղղորդված փնջեր: Օգտագործում են ռադիոսպեկտրադիտման մեջ, քվանտ. էլեկտրոնիկայում, արագացուցիչ տեխնիկայում, լազեր. սպեկտրադիտման մեջ, ատոմ. օպտիկայում:

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ՋԱՆԳՎԱԾ, **մոլեկուլային կշիռ**, ցույց է տալիս, թե մոլ–ի զանգվածը քանի անգամ է տարբերվում զանգվածի ատոմ. միավորից: Գործնականում հավասար է մոլ–ի բոլոր ատոմների զանգվածների գումարին: Նյութի Մ. զ. նրա տարբեր իզոտոպ. բաղադրություն ունեցող մոլ–ների Մ. զ–ների միջինացված արժեքն է: Մ. զ–ների մեծություններն

օգտագործվում են քիմ., ֆիզ. և քիմտեխ. հաշվարկներում:

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԿԱՊ, տես *Քիմիական կապ*:

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀՀ ԳԱԱ, հիմնադրվել է 1966–ին՝ ՀԽՍՀ ԳԱ կենդբ–յան ինստ–ի փորձարար. կենսբ–յան լաբորատորիա–յի հիմքի վրա: Մինչև 1990–ը կոչվել է Փորձարար. կենսբ–յան ինստ.: Ինստ–ում ուսումնասիրում են բջջի ակտիվության կարգավորման մոլ. մեխանիզմները և նրանց խանգարումները տարբեր ախտաբան. վիճակներում, բջջի կենսունակության հիմքում ընկած գենետիկ. ապարատի գործունեության և նյութափոխանակության տարբեր տեղաշարժերը, պարզաբանում կենսաթաղանթների կառուցվածքի լիպիդային միացությունների դերը բջջի ֆերմենտների ֆիզքիմ. և գործառն. ակտիվության գործում: Ֆիզքիմ. կենսբ–յան բնագավառի հետազոտություններն ընդգրկում են լիպիդ. փոխանակությունը, մոլ. ֆերմենտաբանությունը, իմունաբանության մոլ. հիմունքները, կենսբ. թաղանթների կառուցվածքը ևն: Աշակվում են նաև բժշկության (գերհույզի և պարբեր. հիվանդության), անասնաբուծության կիրառ. բնույթի մի շարք հիմնահարցեր: Հետազոտությունների կարևորագույն ուղղություն է հայկ. գենոմի ուսումնասիրությունը, որոնց արդյունքները կիրառում են հիվանդությունների մոլ. ախտորոշման, կանխարգելման և բուժման ժամանակ: Տնօրեններ՝ Լևոն Ղամբարյան, Ժան Հակոբյան, Աննա Բոյաջյան, Արսեն Առաքելյան (2015–ից):

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, մոլ. մակարդակով հետազոտում է կյանքի հիմն. հատկություններն ու դրսևորումները: Պարզաբանում է, թե օրգանիզմների աճումն ու զարգացումը, ժառանգ. տեղեկույթի պահպանումն ու փոխանցումը, կենդանի բջիջներում էներգիայի փոխակերպումն ինչ կերպով և չափով են պայմանավորված կենսբ. կարևոր մակրոմոլ–ների (գլխավորապես՝ սպիտակուցների և նուկլեինաթթուների) կառուցվածքով ու առանձնահատկություններով: Սերտորեն առնչվում է կենսաքիմիայի և կենսաֆիզիկայի, իսկ պատմականորեն՝ նաև գենետիկայի ու մանրէաբանության հետ: Մ. կ–յան ծագումը սովորաբար համագրում են 1953–ը, երբ Ջ. Ուոթսոնը և Ֆ. Կրիկը առաջարկեցին ԴՆԹ–ի կրկնակի պարույրի մոդելը: Հաճախ մոլ. գենետիկայի, կենսաքիմիայի և կենսաֆիզիկայի հետ միավորում են որպես ֆիզքիմ. կենսբ–յուն:

ՀՀ–ում Մ. կ–յան ուսումնասիրությունները կատարվում են ԳԱԱ մոլ. կենսբ–յան ինստ–ում, ԵՊՀ կենսբ–յան ֆակ–ում, Առողջության առաջնային պահպանման կենտրոնում ևն:

«ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ», ժառանգ. հիվանդություններ, որոնք պայմանավորված են կենսաքիմ. փոփոխություններով (սպիտակուց., ածխաջր. և նյութափոխանակության այլ տեսակների խանգարումներ):

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ՁԱՅՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ձայնագիտ. մեթոդներով (հիմնականում՝ ձայնի արագության և կլանման չափման հիման վրա) ուսումնասիրում է նյութի ատոմամոլ. կառուցվածքն ու հատկությունները:

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ՄՊԵԿՏՐՆԵՐ, լույսի առաքման, կլանման և ցրման օպտիկ. սպեկտրներ, որոնք պատկանում են ազատ կամ թույլ կապված մոլ–ներին: Բաղկացած են խիտ դասավորված բազմաթիվ սպեկտր. շերտերից և գծերից, որոնց կառուցվածքն ու տեղաբաշխվածությունը բնորոշ են դրանք առաքող մոլ–ներին: Առաջանում են մոլ–ի էներգիայի էլեկտրոն., տատանող. և պտտ. մակարդակների միջև քվանտ. անցումների ժամանակ: Լինում են էլեկտրոն., տատանող. և պտտ. Մ. ս.: Մ. ս–ի միջոցով ուսումնասիրում են մոլ–ների կառուցվածքը, վիճակը, հատկությունները, նաև վերլուծում են նյութի մոլ. կազմությունը:

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ՕՊՏԻԿԱ, *օպտիկայի* բաժին. ուսումնասիրում է նյութի օպտիկ. հատկությունների և նրա ատոմների ու մոլ–ների հատկությունների միջև եղած կապը: Մ. օ–ում հետազոտում են լույսի անդրադարձումը, բեկումը և ցրումը, օպտիկ. ակտիվությունը, մագնիսաօպտիկ. և էլեկտրաօպտիկ. երևույթներ ևն:

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ՕՐԲԻՏԱԼՆԵՐԻ եղանակ, քվանտաքիմ. հաշվարկ. եղանակ, ըստ որի՝ մոլ–ի յուրաքանչյուր էլեկտրոն նկարագրվում է իր ալիք. ֆունկցիայով (մոլ. օրբիտալով, ՄՕ): Գործնականում յուրաքանչյուր ՄՕ հաճախ պատկերացնում են որպես ատոմ. օրբիտալների գծային համակցություն: Որևէ եղանակով կառուցված մոլ–ի ալիք. ֆունկցիան այնուհետև ճշգրտվում է, օր., վարիացիայի եղանակով: Նման մոտեցմամբ կարելի է մոտավորապես որոշել մոլ–ի էներգետիկ վիճակը, բացատրել նրա բազմաթիվ հատկություններն ու կառուցվածքը:

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ՖԻԶԻԿԱ, ֆիզիկայի բաժին. ուսումնասիրում է նյութի հատկությունները տարբեր ագրեգատ. վիճակներում՝ դրանց մոլ. կառուցվածքների դիտարկման հիման վրա: Որպես ֆիզիկայի ինքնուրույն բաժիններ՝ Մ. ֆ–ից անջատվել են *պինդ մարմնի ֆիզիկան*, ֆիզ. կինետիկան, ֆիզքիմիան ևն:

ՄՈԼԵԿՈՒԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, ՀՀ ԳԱԱ Օրգ. և դեղագործ. քիմիայի գիտատեխնոլոգ. կենտրոնի (2006): Կազմակերպվել է 1994–ին: Կատարվում են օրգ. միացությունների կառուցվածքի հետազոտություններ, ուսումնասիրվում կենսաբանորեն ակտիվ միացությունների կառուցվածքը, ֆիզ. հատկություն–կառուցվածք կապը, կառուցվածք. փուլային անցումները միաբյուրեղ. դիֆրակցիայի եղանակով: Հետազոտվում են կենսանմանակային փոխազդեցություններն ու փոխարկումները մետաղապորֆիրինների կոօրդինացիոն ոլորտում: Ուսումնասիրվում է օրգ. և տարրօրգ. միացությունների տարած. կառուցվածքն ու էլեկտրոն. բաշխվածությունն իզոտրոպ և ուղղորդված միջավայրերում՝ կենսաբանորեն ակտիվ նյութերի ֆրագմենտացման օրինաչափությունները: Տնօրեն՝ Սուրեն Սամյան:

ՄՈԼԵՌԱՆԴՈՒԹՅՈՒՆ, *ֆանատիզմ* (լատ.՝ fanaticus – մոլեգին), 1. որևէ հավատալիքի կամ գաղափարի հետևելը և անհանդուրժողականությունը այլախոհության բոլոր դրսևորումների նկատմամբ (օր.՝ կրոն. Մ.): 2. Փխբ. իմաստով՝ որևէ երևույթի մոլի նվիրումը:

ՄՈԼԵՎՈՆ (լատ.՝ Mons Livonis – Լևոնի լեռ), բերդ Լեռն. Կիլիկիայում՝ *Լամբրոնի* արմ. կողմում՝ համանուն դաշտում: 1214–ին Լևոն Բ–ն Մ. պարգևել է խաչակիր ասպետներին: XIV դ–ի սկզբին Մ–ի տերն էր Օշինի եղբայր Ալինախը: XIII–XIV դդ–ում եղել է եպիսկոպոսանիստ: 1488–ին նվաճել են օսմ. թուրքերը: «Մ.» են անվանվում նաև շրջակա գվո–ը, մոտակա լ–անցքն ու վանքը:

ՄՈԼԻԲԴԱՏՆԵՐ, մոլիբդենաթթուների (H_2MoO_4, H_6MoO_6, պոլիմոլիբդենային թթու ևն) աղեր: Կալցիումի մոլիբդատը՝ $CaMoO_4$–ը, օգտագործում են պողպատների լեգիրման համար. ամոնիումի պարամոլիբդատի [$(NH_4)_6Mo_7O_{24}$] ազոտաթթվական լուծույթը՝ վերլուծ. քիմիայում: Առավել մեծ կիրառություն ունի որպես միկրոպարարտանյութ և ազատ մոլիբդեն ստանալու կիսաարգասիք: Մ–ի թթվային լուծույթների վրա վերականգնիչներ (H_2S, SO_2, Zn ևն) ավելացնելիս ստացվում է ամորֆ նստվածք, որը մետաքսը ներկելու համար օգտագործվող **մոլիբդենային կապույտն** է:

ՄՈԼԻԲԴԵՆ (Molybdaenum), Mo, տարրերի պարբեր. համակարգի VI խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 42, ա. զ.՝ 95,94: Անվանումը՝ հուն. molybdos – կապար բառից (ըստ Mo–ի և Pb–ի միներալների արտաքին նմանության): Բաց գորշավուն մետաղ է, խտ.՝ 10,2 $գ/սմ^3$, $t_{հալ.}$՝ 2623°C: Մ. հազվագյուտ տարր է, պարունակությունը երկրակեղևում՝ $1{,}1 \cdot 10^{-4}$ ըստ զանգվածի: Պարունակվում է բուս. և կենդ. օրգանիզմներում: Բույսերում Մ. խթանում է նուկլեինաթթուների և սպիտակուցների կենսասինթեզը, մեծացնում քլորոֆիլի և վիտամինների պարունակությունը: Մ–ի անբավարարությունից շատ բույսեր չեն պտղաբերում և ոչնչանում են: Մոլիբդեն. միներալներից շատերը *մոլիբդատներ* են: Մ–ի հիմն. հումքը մոլիբդենիտն է (MoS_2): Մ. քիմիապես կայուն է (օդում օքսիդանում է 400°C–ից բարձր ջերմաստիճանում): Մ–ի ավելի քան 75 %–ը կիրառվում է ինքնաթիռա– և մեքենաշինության մեջ օգտագործվող թուջերի ու պողպատների լեգիրման համար: Մ. կարևոր կառուցվածք. նյութ է էլեկտրալամպերի թելերի էլեկտրավակուում. սարքերի կաթոդների համար:

ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՆՅՈՒԹԵՐ, մոլիբդենի բնական միացություններ, որոնցից տնտեսապես շահավետ է մետաղի կորզումը: Գլխ. միներալը մոլիբդենիտն (MoS_2) է: Հիմնականում մշակում են մոլիբդենի 0,05–0,08 % պարունակությամբ երակիկացանավոր հանքանյութերը, որոնց բաժին է ընկնում մոլիբդեն. խտանյութերի համաշխ. արտադրանքի 90 %–ից ավելին: Մ. հ–ի խոշոր հանքավայրեր կան ՀՀ–ում (Քաջարան, Ագարակ, Դաստակերտ, Հանքավան):

ՄՈԼԻԲԴԵՆԻ ՀԱՄԱՁՈՒԼՎԱԾՔՆԵՐ, մոլիբդենի հիմքով համաձուլվածքներ: Լեգիրման համար կիրառում են Ti, Zr, Hf, Nb, V, C, W, Re, նաև ավելացնում են ոչ մեծ քանակությամբ B, Cr, Ni, Co, Ta և որոշ հազվագյուտ հող. տարրեր: Օժտված են կրակադիմացկունությամբ, առաձգականության բարձր մոդուլով, ընդարձակման ցածրջերմաստիճան. գործակցով, ջերմանեյտրոնների զավթման փոքր հատվածքով: Օգտագործում են որպես կրակադիմացկուն կառուցվածք. նյութեր, դրանցից պատրաստում են ավիացիոն գազատուրբինների ատոմ. ռեակտորների

մանրամասեր, տիեզ. և հրթիռ. շարժիչների առանձին հանգույցներ ևն:

ՄՈԼԻԲԴԵՆԻ ՕՔՍԻԴՆԵՐ, MoO_2, MoO_3, բյուրեղ. նյութեր են: MoO_3-ը դժվար է լուծվում ջրում, իսկ MoO_2-ը չի լուծվում: Մ. օ. միջանկյալ արգասիքներ են մոլիբդենի և նրա համաձուլվածքների արտադր-յան մեջ: MoO_3-ն արծների, ջնարակների բաղադրամաս է, սինթետիկ վառելանյութի, նավթ. եթերի ևնի ստացման կատալիզորդ: MoO_2-ը նավթի հիդրման կատալիզորդ է:

ՄՈԼԻԵՐ (Molière, Ժան-Բատիստ Պոքլեն, 1622–1673), ֆրանսիացի դրամատուրգ, դերասան, թատեր. գործիչ: «Բարձր կատակերգություն» ժանրի հիմնադիրը («Կանանց դպրոցը», հրտ.՝ 1663, բեմ.՝ 1662), բեմ. արվ-ի բարենորոգիչ, ռեալիստ. գրկ-յան նախակարապետ, սոցիալ-կենցաղ. կատակերգության հիմնադիրը, «Փայլուն թատրոն»-ի կազմակերպիչ: Հեղինակ է «Տարտյուֆ» (բեմ. և հրտ.՝ 1669, հայ.՝ 1874), «Դոն Ժուան» (բեմ.՝ 1665, հրտ.՝ 1683), «Միզանտրոպ» (բեմ.՝ 1666, հրտ.՝ 1667), «Քաղքենին ազնվական» (բեմ.՝ 1670, հրտ.՝ 1671, հայ.՝ 1903), «Երևակայական հիվանդը» (բեմ.՝ 1673, հրտ.՝ 1674, հայ.՝ 1886) պիեսների, որոնք բազմիցս բեմադրվել են հայ բեմում: Հայ. հրատարակվել են նաև «Ագահն» (1854), «Ակամայ բժիշկ» (1854), «Կեղծ ազնուհիք» (1898), «Թոչող բժիշկն» (1900), «Կատակերգք» (հ. 1–2, 1903–05), «Ժորժ Դանդէն կամ Շփոթուած ամուսինը» (1907), «Երկու խուլեր» (1921), «Բռնի ամուսնութիւն» (1930) և այլ երկեր:

ՄՈԼԻՆԱ (Molina) Լուիս դե (1535–1600), իսպանացի կաթոլիկ աստվածաբան, ճիզվիտ: Կամքի ազատության և վերին բարօրության շնորհների, ինչպես նաև աստված. նախախնամության հետ համաձայնության մասին Մ-ի ստեղծագործությունը (1588) բուռն քննարկումներ է առաջացրել կաթոլիկ աստվածաբանության մեջ մոլինիստ–ճիզվիտների և թոմիստ–դոմինիկյանների շրջանում:

ՄՈԼԻՆԵՋԻԱՆԵՐ, պեցիլային ձկների ընտանիքի ձուկ: Արուների երկ.՝ մինչև 9 *սմ*, էգերինը՝ մինչև 15 *սմ*: Հայտնի է 8 տեսակ՝ Ամերիկայի քաղցրահամ և աղիավուն ջրերում, բազմացնում են աքվարիումներում:

ՄՈԼԼԱ (արաբ.՝ մաուլա – տիրակալ), կրոն. պաշտամունքի սպասավոր մահմեդականության մեջ, որին սովորաբար ընտրում են շարիաթի գիտակների շարքից:

ՄՈԼԿՈՎ Ալֆրեդ Վլադիմիրի (1870–1947), ռուս հիգիենիստ, երեխաների և դեռահասների հիգիենայի հիմնադիրներից Ռուսաստանում: ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1934): Ղեկավարել է երեխայի զարգացման և առողջ. վիճակի սոցիալ-հիգիենային առաջին հետազոտությունները:

«ՄՈԼՆԻԱ», խորհրդ. ԵԱՀ-ների սերիայի և նրանց մշակման ու արձակման ծրագիրը՝ հեռուստատես. ծրագրերի վերահաղորդման և հեռագր., հեռախոս. ու լուսահեռագր. կապերի իրականացման, նաև ուղեծրից հեռուստա- և ռադիոկապի փորձն. հաղորդումների համար: Ներառված էր «Օրբիտա» տիեզ. կապի համակարգի կազմում («Մ-օրբիտա»):

«ՄՈԼՈԴԱՅԱ ԳՎԱՐԴԻԱ» («Молодая гвардия» – «Երիտասարդ գվարդիա»), գր-գեղ., հաս-քաղ. հանդես (1922–ից, Մոսկվա, 1942–47-ին ընդհատվել է, 1948–1956-ին՝ որպես ալմանախ): Մինչև 1990-ը՝ ՀամԼԿԵՄ ԿԿ պաշտոնաթերթը: ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան (1972):

ՄՈԼՈԴԵՆՍԿԻ Միխայիլ Սերգեևիչ (1909–1991), ռուս երկրաֆիզիկոս, գեոդեզիստ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1946): Աշակել է Երկրի ձևի և գրավիտացիոն դաշտի, մակընթացության և առանցքաճոճքային (նուտացիոն) շարժումների որոշման տեսություն: ԽՍՀՄ Պետ. (1946, 1951), Լենինյան (1963) մրց-ներ:

ՄՈԼՈԴՉԻ Ալեքսանդր Իգնատևիչ (1920–2002), խորհրդ. օդաչու, ավիացիայի գեն-լեյտ. (1962): ԽՄ հերոս (1941, 1942): ՀՄՊ-ի ժամանակ եղել է հեռավոր գործողության ավիացիայի սավառնակախմբի հրամ. և կատարել է 311 մարտ. թռիչք, որից 287-ը՝ գիշեր.:

ՄՈԼՈԴՅՈՎ Վլադիմիր Ալեքսանդրովիչ (1911–1942), խորհրդ. հետախույզ, կապիտան: ԽՄ հերոս (1944, հետմահու): ՀՄՊ-ի ժամանակ Օդեսայում եղել է հետախուզ. դիվերսիոն խմբի պետ: Սահապատժի են ենթարկել ֆաշիստները:

ՄՈԼՈԿՈՎ Վասիլի Սերգեևիչ (1895–1962), խորհրդ. օդաչու, ավիացիայի գեն-մայոր (1940): ԽՄ հերոս (1934): 1934-ին մասնակցել է «Չելյուսկին» շոգենավի անձնակազմի փրկությանը, 1937-ին՝ Հս. բևեռ օդային արշավին: 1938-ից՝ ԽՍՀՄ Քաղաքաց. օդ. նավատորմի գլխ. վարչության պետ: ՀՄՊ-ում՝ ավիացիոն դիվիզիայի հրամ.:


ՄՈԼՈՏՈՎ (Սկրյաբին) Վյաչեսլավ Միխայլովիչ (1890–1986), խորհրդ. կուս. և պետ. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1943): Հոկտ. զինվ. ապստամբության (1917) օրերին՝ Պետրոգրադի ՌՀԿ անդամ: 1920–21-ին՝ Ուկրաինայի Կ(բ)Կ ԿԿ քարտուղար, 1921–30-ին՝ ՀամԿ(բ)Կ ԿԿ քարտուղար, 1930–41-ին՝ ԽՍՀՄ ԺԿԽ, միաժամանակ, 1930–37-ին՝ ԽՍՀՄ Աշխ-ի և պաշտպան խորհրդի նախագահ: 1939–49 և 1953–56-ին՝ ԽՍՀՄ ԱԳ ժողկոմ: Եղել է Ի. Վ. *Ստալինի* մերձավորագույն քաղ. շրջապատում. 1930–50-ական թթ-ի զանգված. բռնաճնշումների գործուն կազմակերպիչներից է: 1957-ին (Լ. Մ. *Կագանովիչի*, Գ. Մ. *Մալենկովի* և ուր. հետ) հանդես է եկել Ն. Ս. *Խրուշչովի* քաղ. կուրսի դեմ. հանվել է ԿԿ նախագահությունից և ԽՄԿԿ ԿԿ-ից: Հեռացվել է ԽՄԿԿ-ից, 1984-ին՝ վերականգնվել:

Մ-ի անվան հետ են կապված Մոլոտով-Ռիբենտրոպի պակտը (տես *Խորհրդա-գերմանական պայմանագիր 1939*) և «Մոլոտովի կոկտեյլ» (բռնկվող խառնուրդով շիշ) հասկացությունը:

ՄՈԼՈՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, *Արեգակնային համակարգի* մոլորակները և նրանց արբանյակներն ուսումնասիրող գիտ-յունների համալիր: Մ. հետազոտում է մոլորակների և արբանյակների մակերևույթի ֆիզ. հատկությունները, քիմ. կազմությունը, կառուցվածքը և հատկապես միջուկի բաղադրությունը, ներքին ու արտաքին թաղանթները:

ՄՈԼՈՐԱԿԱՁԵՎ ՄԻԳԱՄԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ, գալակտիկ. միգամածություններ, որոնք աստղադիտակով դիտելիս երևում են շրջանաձև սկավառակների (մոլորակների սկավառակներ հիշեցնող) կամ օղակների տեսքով: Կազմված են գազից, նրանց կենտրոնում շատ բարձր ջերմաստիճանով (70–150 հզ. K) աստղն է՝ միգամածությունների լուսարձակման աղբյուրը: Մ. մ-ի միջին տրամագիծը մոտ 10 հզ. *ա. մ.* է:

ՄՈԼՈՐԱԿԱՅԻՆ ՓՈԽԱՆՑԻՉ, **Պլանետար փոխանցիչ**, տեղափոխվող երկրչփ. առանցքներով (սատելիտներ) անիվներով ***ատամնավոր փոխանցիչ***: Առանցքները շրջագլորվում են կենտր. անվի շուրջը: Փոքրաչափ է և ունի փոքր զանգված: Օգտագործվում է բեռնամբարձ մեքենաներում, հաստոցներում և այլուր:




Քառ- (ա) և հնգօղակ (բ) մոլորակային մեխանիզմներ. 1 և 4 – կենտրոնական (շարժական) ատամնանիվներ, 2- սատելիտներ, 3- անշարժ ատամնանիվ, H –սրարիչ

ՄՈԼՈՐԱԿԻ ԴԻՄԱԿԱՅՅՈՒԹՅՈՒՆ, մոլորակի դիրքը, երբ նա Երկրից երևում է Արեգակին հակադիր ուղղությամբ (մոլորակի և Արեգակի խավարածրային երկայն-ների տարբերությունը կազմում է 180°): Մ. դ. հնարավոր է միայն արտաքին մոլորակների՝ Մարսի, Յուպիտերի ևնի համար:

ՄՈԼՈՐԱԿՆԵՐ, գրեթե գնդաձև, զանգվածեղ երկն. մարմիններ, որոնք էլիպսաձև ուղեծրերով պտտվում են աստղի շուրջը և լուսավորվում այդ աստղի լույսով: Արեգակն. համակարգի Մ., ըստ Արեգակից ունեցած միջին հեռավորության, դասավորված են՝ Մերկուրի, Վեներա, Երկիր, Մարս, Յուպիտեր, Սատուռն, Ուրան, Նեպտուն: Երկր. խմբի Մ. (Մերկուրի, Վեներա, Երկիր, Մարս) չափերով և քիմ. կազմով մոտ են իրար, նրանց նյութի միջին խտ.՝ 5,52–3,97 *գ/սմ*^{3}: Մ-հսկաների (Յուպիտեր, Սատուռն, Ուրան, Նեպտուն) նյութի միջին խտ. 1,4 *գ/սմ*^{3} է, այսինքն՝ մոտ է արեգակնայինին: Նախկինում Արեգակն. համակարգի Մ-ի թվին էին դասում Պլուտոնը: Հայտնաբերվել են նաև այլ աստղերի շուրջը պտտվող 500 Մ. (այսպես կոչված էկզոմոլորակներ): Արեգակն. համակարգի Մ. (բացառությամբ Մերկուրիի և Վեներայի) ունեն բնական *արբանյակներ*:

ՄՈԼՈՐԱԿՆԵՐԻ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐ, մոլորակների մագնիսոլորտների ներքին տիրույթներ, որտեղ մոլորակի սեփ. մագնիս. դաշտը պահում է մեծ կինետիկ. էներգիայով լիցքավորված մասնիկներ (պրոտոններ, էլեկտրոններ): Մ. ճ. գ-ում մագնիս. դաշտի ազդեցությամբ այդ մասնիկները բարդ հետագծերով շարժվում են Հս. կիսագնդից դեպի Հվ. կիսագունդ և հակառակ ուղղությամբ: Երկրի համար սովորաբար առանձնացնում են ներքին և արտաքին ճառագայթ. գոտիներ. ներքին գոտում մասնիկների (հիմնականում՝ պրոտոններ) առլգն խտ-յունը հասարակածում 3–4 հզ. *կմ* բարձրյան վրա է, իսկ արտաքին գոտու առլգն արժեքը՝ մոտ 22 հզ. *կմ* բարձր-յան վրա: Ճառագայթ. գոտիները վտանգի աղբյուր են տիեզ. թռիչքների համար: Հզոր ճառագայթ. գոտիներ ունեն Յուպիտերը և Սատուռնը:



Երկրի ճառագայթային գոտիների կառուցվածքը (կտրվածքը համապատասխանում է կեսօրյա միջօրեականին). I – ներքին (պրոտոնային) գոտի, II – փոքր էներգիայի պրոտոնների գոտի, III – արտաքին (էլեկտրոնային) գոտի, IV – արեգակնային քամու մասնիկների քվազիզավթման գոտի

ՄՈԼՈՐԱԿՆԵՐԻ ՄԻԱՅՈՒՄ Արեգակի հետ, մոլորակների այնպիսի դիրք, երբ նրանց խավարածր. երկայն–յունները համընկնում են, այսինքն՝ Երկրից դիտելիս մոլորակը երևում է կամ Արեգակի դիմաց կամ հետևում: Այսպես կոչված ներքին մոլորակների (Մերկուրի և Վեներա) համար տարբերում են վերին և ստորին Մ. մ–ներ (տես *Փոխադասավորություն մոլորակների*):

ՄՈՍՐԱՑՏ ՍՈՒՔԱԿ (Podiceps grisegena), *սուզակների* ընտանիքի ջրլող թռչուն: Նստակյաց է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 40–50, թևերի բացվածքը՝ 77–85 *սմ*, կ. զ.՝ 0,57–0,12 *կգ*: Կտուցը երկար է, սրածայր, ամբողջությամբ մուգ, հիմքը՝ դեղին: Ձայնը բարձր ու կարճատև լաց է հիշեցնում: Սակավաթիվ է: ՀՀ Արգենիսի լճում 2000–05–ին բնադրագաղութն անհետացել է:

ՄՈԽՐԱԲԼՈՒՐ, վաղ բրոնզի, վաղ երկաթի դարի և հելլենիստ. շրջանի գյուղատեղի, վաղ միջնադար. գերեզմանոց Վաղարշապատ ք–ից 4 *կմ* հվ՝ Քասաղ գետի հնահունի ձախ ափին: Բազմաշերտ հուշարձան է: Մշակութ. շերտի առլգն հաստ. շուրջ 10 *մ*է: Պեղումներ են կատարել Երվանդ *Լալայանը*, Ե. Բայբուրդյանը, Ս. Սարդարյանը, Գ. Արեշյանը (ԵՊՀ արշավախմբի ղեկ.), Բ. Բ. Պիոտրովսկին և ուր. հնագետներ:

ՄՈԽՐԱԳՈՒԽՆ ԱԳՌԱՎ (Corvus corone), *ագռավների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է: Մարմնի երկ.՝ 45–47, թևերի բացվածքը՝ 93–104 *սմ*, կ. զ.՝ 400–600 *գ*: Բնադրում է մեկուսացած: Ընդունակ է տրամաբ. որոշ գործողություններ կատարելու, մարդու խոսքը վերարտադրելու: Սնվում է անողնաշարներով, սերմերով, մանր ողնաշարավորներով, լեշերով: Որպես ամենակեր՝ շրջակա միջավայրի աղտոտվածության ցուցիչ է: Մեծ վնաս կարող է պատճառել մանր (հատկապես՝ ջրլող) թռչունների ձագերին ու ձվերին: Տհաճ կոռոցներով անհանգիստ մթն. են ստեղծում փողոցներում ու բակերում:

ՄՈԽՐԱԳՈՒԽՆ ԱԿԱՆՋԵՂ ՉՂՋԻԿ (Plecotus austrialus), հարթաքիթ չղջիկների ընտանիքի կաթնասուն կենդանի: Միջին չափի չղջիկ է: Մարմնի երկ.՝ 38–40 *մմ*, կ. զ.՝ մոտ 10 *գ*: Ականջները մեծ են (40–41 *մմ*) և ունեն սրածայր ներքին ականջ (կոզելուկ): Թափաթռիչքը և կարճ ու լայն թևերը հնարավորություն են տալիս օդում «կախվել» զոհի վրա: Սնվում է փոքր միջատներով (թիթեռներ, մոծակներ, մլակներ) և ոչ կարծր խիտինային պատյան ունեցող բզեզներով:

ՄՈԽՐԱԳՈՒԽՆ ԱՐՏՈՒՅՏ (Calandrella rufes cens), *արտույտների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող: Մարմնի երկ.՝ 13–14, թևերի բացվածքը՝ 24–32 *սմ*, կ. զ.՝ 22,4–28,1 *գ*: Կտուցը կարճ է ու հաստ: Ապրում է կիսաանապատներում, չուի ընթացքում՝ լ–տափաստաններում: Սնվում է խոտաբույսերի սերմերով, անողնաշարներով:

ՄՈԽՐԱԳՈՒԽՆ ԲԱՂ (Anas strepera), *բադերի* ընտանիքի ջրլող թռչուն: Մարմնի երկ.՝ 46–56, թևերի բացվածքը՝ 84–95 *սմ*, կ. զ.՝ 650–900 *գ*: Մ. բ–երը սովորաբար հանդիպում են առանձին զույգերով և փոքր ու մեծ երամներով (60–300 թռչուն): Սևանա լճի մակարդակի նվազման և Գիլլի լճի չորացման հետևանքով ողջ ավազանի տարածքում բնադրող խոշոր համակեցություններն անհետացել են, մասամբ էլ տեղափոխվել Արարատյան դաշտի լճերն ու լճակները: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՄՈԽՐԱԳՈՒԽՆ ԲՈՒ (Grey Owl, Ջորջ Ստենսֆելդ Բելանի, 1888–1938), կանադացի անգլիագիր գրող, բնախույզ: Հեղինակ է բնության և կենդանիների մասին «Մաջոն և նրա կուղբերը» (1935), «Ծառը» (1937) և այլ գրքերի:

ՄՈԽՐԱԳՈՒԽՆ ԿԱՔԱՎ (Perdix perdix), *փասիանների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է: Մարմնի երկ.՝ 29–31, թևերի բացվածքը՝ 45–48 *սմ*, կ. զ.՝ 350–600 *գ*: Սովորաբար հանդիպում են ոչ մեծ երամներով: Թվաքանակը նվազում է: Արժեքավոր որսատեսակ է. միսն ունի բարձր կարգի սննդ. հատկանիշներ:

ՄՈԽՐԱԳՈՒԽՆ ԿՈՒՈՒՆԿ (Grus grus), *կռունկների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 110–120, թևերի բացվածքը՝ 220–245 *սմ*, կ. զ.՝ 4–5,5 *կգ*: Թռչում է թևերի հզոր թափահարումներով և երկարատև սահասավառնումներով՝ գլուխը, վիզը և ոտքերը ձգած: Ապրում է հիմնականում լ–տափաստաններում: Հայ մատենագրության էջերում, ավանդապատումներում, երգերում ևն կռունկը համարվում է հույսի ու հավատի խորհրդանիշ: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՄՈԽՐԱԳՈՒԽՆ ՀԱՄՍՏԵՐԻԿ (Cricetulus migratorius), *համստերների* ընտանիքի կրծող կաթնասուն կենդանի: Մարմնի երկ.՝ մինչև 123, պոչինը՝ 37 *մմ*, կ. զ.՝ մինչև 69 *գ*: ՀՀ–ում տարածված է բնակավայրերում (այդ թվում՝ Երևանում և այլ խոշոր ք–ներում), բնության մեջ՝ կիսաանապատային մինչև լ–տափաստան. գոտի: Ապրում է իր փորած ստորգետնյա միջին բարդության բներում կամ բնական թաքստոցներում, նաև այլ կրծողների լքված բներում: Վնաս է պատճառում տնային և պահեստային տնտ–յուններին: Մի շարք հատուկ վտանգավոր վարակների կրող է:

ՄՈԽՐԱԳՈՒԽՆ ՃԱՆՃՈՒՐՍ (Muscicapa striata), *ճանճորսների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 14,5, թևերի բացվածքը՝ 23–25,5 *սմ*, կ. զ.՝ 12–18 *գ*: Ուղղաձիգ կեցվածքով նստում է երևացող տեղերում՝ ծառերի եզրային ճյուղերին, ցանկապատերին: Միջատներ որսում է թռիչքի ընթացքում:

ՄՈԽՐԱԳՈՒԽՆ ՇԱՀՐԻԿ (Sylvia communis), *շահրիկների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, տարածված: Մարմնի երկ.՝ 14, թևերի բացվածքը՝ 18,5–23 *սմ*, կ. զ.՝ 14–16 *գ*: Արուն երգում է թփուտի ծայրին նստած կամ հարսանեկան թռիչքի ընթացքում: Չուի ընթացքում լայնորեն տարածված է:

ՄՈԽՐԱԳՈՒԽՆ ՍԱՂ (Anser anser), *բադերի* ընտանիքի ջրլող թռչուն: Նստակյաց է, Anser anser–ը՝ տարածված: Մարմնի երկ.՝ 75–90, թևերի բացվածքը՝ 147–180 *սմ*, կ. զ.՝ 2,5–4,4 (հազվադեպ՝ 6) *կգ*: Խիստ հնչեղ ձայնով թռչուն է. թռիչքի ընթացքում լսելի են եռահնչյուն ճիչեր: Թռչում են սեպաձև երամ կազմած (30–100 թռչուն)՝ սագերին բնորոշ կոնչոցով: ՀՀ տարածքում Մ. ս–ի թվաքանակը և բնադրման համակեցությունները խիստ կրճատվել են: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՄՈԽՐԵՆԵՍԻ ՕԻՍՏ ԴՈՆԻ ՎԱՆՔ, ճարտ. համալիր Լ.Ղ.Հ Հադրութի շրջանի Սոխրենես գ–ից 3,5 *կմ* հս–արմ.՝ Յուղուսեն լ–ան լանջին: Վանքի եկեղեցին (V–VI դդ., կոպտատաշ բազալտ) քառախորան, կենտրոնագմբեթ (քանդված է) հորինվածք է, «հոիփսիմեատիպ» եկեղեցիների հնագույն օրինակը: Վանքի գերեզմանոցում խաչքարերից վաղագույնը 997–ից է: Եկեղեցու հվ–արմ–ում վանքի միաբան Կանդիլի խաչքարն է (1044–ին):

«ՄՈԶԱԿ», երգիծ–գեղ. շաբաթաթերթ (1906–07, Թիֆլիս, Բաքու՝ հայ., ռուս., վրաց.): Խմբ–հրտ.՝ Գարեգին Երիցյան:

ՄՈԶԱԿՆԵՐ (Nematocera), **երկարաբեղիկ երկթևանիներ**, միջատների ենթակարգ: Հայտնի է 25 հգ., ՀՀ–ում՝ ավելի քան 20 տեսակ՝ առավել տարածված Արարատյան դաշտում, Սևանի ավազանում և անտառ. շրջաններում: *Զագիրքի* ամենակարևոր բաղադրիչն են: Էգերը սնվում են բույսերի հյութերով կամ մարդու և կենդանիների արյունով, արուները՝ միայն բուս. հյութով: Մ–ի ակտիվությունը մեծանում է երեկոյան և գիշերը: Առավել վտանգավոր են Culicidae ընտանիքի անոֆելես սեռի մալարիային մոծակները, որոնք մալարիայի, վիրուս. ու ճիճվային հիվանդությունների հարուցիչների փոխանցողներ են: Ոչ մալարիային Մ. (Culex pipiens pipiens) փոխանցում են ավելի քան 50 վարակիչ և մակարուծ. հիվանդություններ (դեղին տենդ, տուլարեմիա ևն):

«ՄՈԿԱՑ ՄԻՐՋԱ», ժող. միջնադար. վիպաքնար. երգ, բալլադ (ըստ *Կոմիտասի*՝ դյուցազներգ): Տարածված էր Մոկսում: Երգում Մոկաց Միրզայի եղեր. մահվան պատմությունն է: Պահպանվել է Մոկաց բարբառով 4 տարբերակ: Եղանակը (գրառել են Կոմիտասը և Սպիրիդոն Մելիքյանը), ելևէջ. տարրերով, հարում է «*Սաանա ծոներ*»–ի մեղեդիներին ու հին շարականներին, իսկ ասերգ. և ծորերգ. հատվածների հակադրումով, ձայնակարգով ու մեղեդիական ընդհ. կառուցվածքով իր մեջ խտացնում է գուսան. վիպաքնար. ու պատմ. երգերին բնորոշ հատկանիշները (պահպանվել է երգի ձայնապնակը՝ Կոմիտասի կատարմամբ):

ՄՈԿԱՑ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ՎԱՆՔ, Փութկու վանք, Սարի վանք, X–XI դդ–ի ճարտ. համալիր Վասպուրականի Մոկաց գվո–ում: Հիմնադրել են Վասպուրականի Արծրունյաց թագավորները: XIV–XV դդ–ում վանքում գործել է դպրոց, ընդօրինակվել են ձեռագրեր: 1601–ին նորոգվել է Ստեփանոս եպս–ի նախաձեռնությամբ. թաղածածկ դահլիճի հորինվածքով Սբ Գևորգ եկեղեցուն կցվել է երկմույթ գավիթ, 1887–ին Աղթամարի կաթողիկոս Խաչատուր Բ Շիրոյանը կառուցել է մատուռ, հյուրատուն:

ՄՈԿԱՅԱՆ Հռիփսիմե Հենրիկի (ծ. 1964), մանկաբարձ-գինեկոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (1999): Մ. մշակել է գինեկոլոգ. հիվանդությունների հակաօքսիդանտային բուժման նոր մեթոդ, ըստ որի, դեղաքանակից կախված, բուժումը որոշվում է անհատականորեն՝ համապատասխան կենսամարկերների միջոցով: «Հայկական վիրաբուժություն XXI» արհեստավարժների միության անդամ (2004–ից):

Ամերիկ. կենսագր. ինստ-ի «Տարվա կին» (2000):

ՄՈԿԱՅԱՆ Վիլլի Հովհաննեսի (1932–1997), ջութակահար: ՀՀ վաստ. արտիստ (1974): ԵՊԿ պրոֆ. (1980): Հանդես է եկել մենահամերգներով և սիմֆ.նվագախմբի հետ: Այսրկովկաս. 1-ին մրցույթի (1960, Բաքու, 2-րդ մրց.) դափնեկիր:

ՄՈԿՇԱՆԵՐԵՆ, մոկշա-մորդվաներեն, Մորդովիայի պետ. լեզուներից: Պատկանում է ուրալյան լեզուներին (ուգրա-ֆինն. լեզվաընտանիք): Գրի հիմքում ռուս. այբուբենն է:

ՄՈԿՍ (պատմ.՝ Որր), գետ Հայկ. լ-աշխարհում, Արլ. Տիգրիսի աջ վտակը: Սկիզբ է առնում Հայկ. Տավրոսի համակարգի Ռշտունյաց լ-ների հվ. լանջերից: Երկ.՝ 52 *կմ*:

ՄՈԿՍ, Մոգս, Մուկրս, գվո Արմ. Հայաստանի Վանի նհնգ-ում՝ Արլ. Տիգրիսի (Ձերմ, այժմ՝ Բոհտանսու) աջակողմյան Մոկս վտակի հովտում: Գլխ. լ-գագաթներն են՝ Առնոս (3550 *մ*), Եղերով (3500 *մ*), Կուռուշահապ (3560 *մ*): Համապատասխանում է Մոկք նհնգ-ի Մոկք Առանձնակ գվո-ին: XVI դ-ի կեսից մտել է Օսմ. կայսրության Վանի նհնգ-ի մեջ: Կառավարել են հայ մելիքները և քուրդ բեկերը: XX դ-ի սկզբին ունեցել է 85 բնակավայր: Կենտրոնը՝ Մոկս գք: 1915-ի մայիսին հայկ. կամավոր. ջոկատներն ազատագրել են Մ., որը, որպես առանձին գվո, մտել է նորակազմ Վանի նհնգ-ի մեջ: Սակայն հուլիսին Մ-ի հայերը բռնագաղթել են՝ տալով ծանր կորուստներ: Ներկայում՝ Բահչեսերայ գվռկ՝ Թուրքիայի Վանի նհնգ-ում:

ՄՈԿՍԻ ԲԱՐԲԱՌ, հայ-ի «կը» ճյուղի բարբառ: Խոսվել է Մոկաց աշխարհում:

ՄՈԿՈՒԼՍԿԻ Ստեֆան Ստեֆանովիչ (1896–1960), ռուս. թատերագետ, գրականագետ, քննադատ: Ռուս. թատերագիտ-յան հիմնադիրներից: Աշխ-ները վերաբերում են Վերածննդի և Լուսավորության շրջանի ֆրանս. և իտալ. արվ-ներին: Հեղինակ է «Արևմտաեվրոպական թատրոնի պատմություն» (հ. 1, 2, 1936, 1939) աշխ-յան: Կազմել է նաև «Քրեստոմատիա» (հ. 1, 2, 1937, 1939) ևն:

ՄՈԿՔ, Մոկաց աշխարհ, նհնգ Մեծ Հայքում: Հայկ. Տավրոսի արլ. լ-ճյուղի շարունակության՝ Մոկաց լ-ների շրջանի՝ Արլ. Տիգրիս կամ Ձերմ (այժմ՝ Բոհտանսու) գետի միջին ավազանում: Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ ունեցել է 8 գվո: Մ. թ. ա. XIII–IX դդ-ում եղել է Նաիրի ցեղ. միության, մ. թ. ա. VI դ-ից՝ Երվանդունիների, IV դ-ի 2-րդ կեսից՝ Մեծ Հայքի թագավորությունների կազմում: IX դ-ի 2-րդ կեսից ենթարկվել է Արծրունի իշխաններին, 908–1021-ին մտել *Վասպուրականի թագավորության* մեջ: XIV դ-ից Մ. են թափանցել քրդ. ցեղեր, XVI դ-ի 1-ին կեսին նվաճել է Օսմ. կայսրությունը, որի կազմում այն մտել է Վանի նհնգ-ի մեջ: Մ-ի բնակչության մեծ մասը հայ էր. Մեծ եղեռնի տարիներին ենթարկվել է բռնագաղթի ու կոտորվել: Փրկվածները հիմնականում անցել են Արլ. Հայաստան:

ՄՈԿՔ ԱՌԱՆՁՆՅԱՑ, Առանձնակ Մոկք, Արքայից գավառ, *Մոկք* նհնգ-ի գվո-ներից: Եղել է Մոկաց նախարար. տան ոստանը: Կենտրոնն էր Մոկս գք-ը:

ՄՈՀԵՆՋՈ-ԴԱՐՈ (սինդհի լեզվով – մոռելների բլուր), Խարապպայի քաղաքակրթության գլխ. կենտրոններից մեկի ավերակները: Հայտնաբերել է (1922) հնդիկ հնագետ Ռ. Բանջերին: Ուսումնասիրությամբ որոշվել են Խարապպայի քաղաքակրթության հիմն. փուլերն ու բնորոշ գծերը:

ՄՈՀԻԿԱՆՆԵՐ, ալգոնկինների խմբի հնդկացի ցեղ ԱՄՆ-ում: Ընդհ. թիվը՝ մոտ 3 հզ. (2000): Խոսում են հիմնականում անգլ-ով: Մորավյան եկեղեցու հետևորդներ են:

ՄՈՀՈՅ-ՆԱԴ (Moholy-Nagy) Լասլո (1895–1946), հունգար լուսանկարիչ, գեղանկարիչ, քանդ.: XX դ-ի 1-ին կեսի ավանգարդի նշանավոր ներկայացուցիչներից: Ստեղծել է արտահայտիչ լուսանկար-դիմանկարներ («Մայակովսկի»), քաղաք. ֆոտոմոնտաժներ («Միլիտարիզմ»), լուսատարած. կոմպոզիցիաներ, որոնք գործնական ազդեցություն են թողել դիզայնի վրա:

ՄՈՂԵՍ (Lacerta), համաստեղություն երկնքի Հս. կիսագնդում՝ Ցեֆեոս, Կարապ, Պեգաս, Անդրոմեդա, Կասիոպեա համաստեղությունների միջև: ՀՀ տարածքից երևում է ամբողջ տարին:

ՄՈՂԵՄՆԵՐ (Sauria), *թևփուկավորների* կարգի սողունների ենթակարգ: Սողունների դասի առավել ընդարձակ խումբն է: Մարմնի երկ.՝ մի քանի *սմ*-ից մինչև 3 *մ* և ավելի (կոմոդյան վարան)՝ ծածկված եղջրացած թեփուկներով: Մեծամասնության վերջույթները լավ են զարգացած: Հայտնի է ավելի քան 3900 տեսակ՝ բոլոր աշխարհամասերում՝ բացի Անտարկտիդայից, առավելապես՝ արևադարձներում և մերձարևադարձներում: Ապրում են նաև տափաստաններում, անապատներում և անտառներում: Կան փորող, ջր., մագլցող և նույնիսկ սավառնաթռիչքի ունակ տեսակներ: Մի շարք Մ-ի պոչն ինքնահատվող է: Որոշ տեսակներ թունավոր են (օր.՝ թունատամը): Ոչնչացնում են վնասատու միջատներին: Առանձին տեսակների միսն ուտելի է, մաշկն օգտագործվում է տարբեր իրեր պատրաստելու համար:

ՄՈՂՆՅԱՆ Եվգենյա Ադամի (1906–1974), մանկաբարձ-գինեկոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (1964), պրոֆ. (1971): Աշխ-ները վերաբերում են հղիների ուշ տոքսիկոզներին, սիրտանոթ. ախտաբանությանը: Առաջինն է կիրառել թերջերմության եղանակը՝ արգանդի ֆունկցիայի խանգարման հետ կապված արյունահոսությունների բուժման համար:

«ՄՈՂՆՈՒ ԱՎԵՏԱՐԱՆ», XI դ-ի մագաղաթե Ավետարան (Մնձնդ., ձեռ. № 7736, գրիչ և ծաղկող՝ *Հովհաննես Սանդղկավանեցի*): Հայկ. ձեռագր. մշակույթի գլուխգործոցներից է: Ընդօրինակման տեղն ու թվականը հայտնի չեն: «Մ. Ա.» է անվանվել Թիֆլիսի Մողնու Սբ Գևորգ եկեղեցում պահվելու համար (1822–1922): Ձեռագրում, բացի այլ պատկերներից, առաջին անգամ հանդիպում ենք գլխագարդերի ու զարդագրերի:

ՄՈՂՈԼԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ, տերություն Հնդկաստանի և Աֆղանստանի տարածքում: Կազմավորվել է XVI դ-ում՝ *Դելիի սուլթանության* անկումից հետո: Կառավարել են *Մեծ մողոլները*: Մայրաքաղաքները՝ Ագրա և Դելի: XVII դ-ում ընդգրկել է ողջ Հնդկաստանը (բացի ծայր հվ-ից): XVIII դ-ում տրոհվել է մի քանի պետությունների, որոնք XVIII–XIX դդ-ում զավթել են անգլիացիները:

ՄՈՄՃՈՒՅԱՆ Մարիամ Պետրոսի (1904–1972), դերասանուհի: ՎԽՍՀ ժող. արտիստ (1958): 1920-ից խաղացել է Հովհաննես Զարիֆյանի, ապա՝ Վարդան Միրզոյանի, Արմեն Արմենյանի, Հովհաննես Աբելյանի և ուր. թատերախմբերում: 1928-ից՝ Թիֆլիսի հայկ. թատրոնի առաջատար դերասանուհի (Մարգարիտ՝ Շիրվանզադեի «Պատվի համար», Կրուչինինա՝ Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», Դեզդեմոնա՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», ևն):

ՄՈՄ՝ ՎԱՌՈՑՔԻ, նաշ-ներում էլ. կայծով այրվող խառնուրդների բռնկման սարք: Մխոց. շարժիչների կենտր. էլեկտրոդի վրա Մ. վ-ի լարումը 10–30 *կՎ* է, իսկ ռեակտիվ շարժիչներում՝ մինչև 16 *կՎ*:

ՄՈՄԱԳԵՂԱՋԵՐ, տեղակայված են մեղուների, իշամեղվի, ուտիճների, որդան կարմիրի և այլ միջատների արտաքին մաշկածածկույթներում: Արտադրում են մոմ, որից որոշ մեղվանմաններ կառուցում են մեղրաբջիջներ:

ՄՈՄԱԽՈՏ, գաղտրիկազգիների ընտանիքի միամյա, երկամյա կամ բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 10 տեսակ, ՀՀ-ում՝ 1՝ գրեթե բոլոր մարզերում:

ՄՈՄԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ, գեղանկարչ. տեխնիկայի տեսակ, որտեղ ներկերը կապակցող նյութը մոմն է: Մ. օգտագործվել է Եգիպտոսում (մ. թ. ա. XIV դ-ից), Հին Հունաստանում (մ. թ. ա. V դ.): Ֆայյումյան դիմանկարները (մ. թ. ա. I դ.–մ. թ. IV դ.) և բյուզ. սրբապատկերները (մինչ XII դ.) կատարվել են Մ-յան տեխնիկայով:

ՄՈՄԱՆՅՈՒԹԵՐ, մոմեր, բուս. և կենդ. ծագման ճարպանման նյութեր, բարձրմոլ. միատոմ սպիրտների և ճարպաթթուների էսթերներ են: Ամորֆ են, դյուրաբեկ և տաքացնելիս հեշտությամբ փափկում են: Հալվում են 40–90°C-ում: Ջրում անլուծելի են, լուծվում են բենզինում: Քիմ. և ֆիզ. հատկություններով նման են ճարպերին: Տարբերում են կենդ. (մեղրամոմ, լանոլին, սպերմացետ ևն), բուս. (կարնաուբայի) և հանք. (օզոկերիտ, ցերեզին) Մ.: Մինթեթիկ Մ. ստանում են ածխածնի օքսիդը հիդրելով կամ էթիլենի պոլիմերմամբ:

ՄՈՄԱՇԵՐՏ, կուտին, մոմանման նյութ, որն արտադրվում է բույսերի տերևների էպիդերմիսի վրա: Խոչընդոտում է տերևների մակերևույթով ջրի կորստին:

ՄՈՄԱՔԱՐ (Cereus milli), **մոմատունկ, գիշերային թագուհի**, *կոզիների* (կակտուսներ) ընտանիքի բույսերի ցեղ: Ընձյուղն առանց տերևների է: Բարձր.՝ մինչև 20 *մ*: Հայտնի է մոտ 40 տեսակ՝ հիմնականում Կենտր., Հվ. Ամերիկայում և Անթիլյան կղզիներում: Ցողուններն օգտագործում են որպես վառելիք:

ՄՈՄԵՆՏ ԻՆԵՐՑԻԱՅԻ, մարմնում զանգվածի բաշխումը բնութագրող և ոչ համընթաց շարժման դեպքում զանգվածի հետ մարմնի իներտության չափի մեծություն: Տարբերում են առանցք. և կենտրոնախույս Մ. ի-ներ: Առանցք. Մ. ի. հավասար է մարմնի բոլոր տարրերի m_i զանգվածների և z առանցքից (որի նկատմամբ հաշվվում է Մ. ի.) այդ տարրերի ունեցած

I_z հեռ–յունների քառակուսիների արտադրյալների գումարին՝ $I_z = \Sigma m_i h_i^2$: x, y, z առանցքների նկատմամբ ուղղանկյուն կոորդինատ. համակարգում կենտրոնախույս Մ. ի. կոչվում են


$$I_{xy} = \Sigma m_i x_i y_i, \quad I_{yz} = \Sigma m_i y_i z_i, \quad I_{zx} = \Sigma m_i z_i x_i$$

մեծությունները (կամ համապատասխան ծավալ. ինտեգրալները): Նրանք բնութագրում են մարմնի ոչ հավասարակշիռ վիճակը:

ՄՈՄԵՆՏ ՇԱՐԺՄԱՆ ՔԱՆԱԿԻ, կինետիկական մոմենտ, իմպուլսի մոմենտ, մեխ. շարժման վեկտոր. դինամիկ. մոմենտ: K նյութ. կետի Մ. շ. ք.՝ O կենտրոնով անշարժ կոորդինատ. համակարգի նկատմամբ, հավասար է, $\vec{K} = \vec{r} \cdot m\vec{v}$, որտեղ m–ը նյութ. կետի զանգվածն է, $\vec{r}$ –ը՝ նրա վեկտոր. շառավիղը, $\vec{v}$ –ն՝ արագությունը: Նյութ. կետերի համակարգի Մ. շ. ք. հավասար է այդ համակարգի բոլոր կետերի Մ. շ. ք–ների երկրչփ. գումարին: O կետի նկատմամբ համընթաց շարժվող պինդ մարմնի Մ. շ. ք. որոշվում է այդ մարմնի զանգվածի կենտրոնի ակնթարթ. դիրքով և արագությամբ՝ $\vec{K} = \vec{r}_ц \cdot m\vec{v}_ш$, m–ը մարմնի զանգվածն է, $\vec{r}_ц$ –ն՝ զանգված. կենտրոնի շառավիղ–վեկտորը, $\vec{v}_ш$ –ն՝ զանգված. կենտրոնի արագությունը:

ՄՈՄԵՆՏ ՊՏՏՈՂ, պտտվող մարմնի անկյուն. արագությունը փոփոխող արտաքին ազդեցության չափը՝ $M_{պտ.}$: Հավասար է մարմնի վրա ազդող բոլոր ուժերի պտտման առանցքի նկատմամբ մոմենտների գումարին և կապված է մարմնի e անկյուն. արագացման հետ $M_{պտ.} = Ie$ բանաձևով, որտեղ I–ն մարմնի իներցիայի մոմենտն է պտտման առանցքի նկատմամբ:

ՄՈՄԵՆՏ ՈՒԺԻ, պինդ մարմնի վրա ուժի պտտող ազդեցությունը բնութագրող մեծություն: Տարբերում են կենտրոնի (կետի) և առանցքի նկատմամբ ուժի մոմենտներ: O կենտրոնի նկատմամբ մոմենտը (նկ. ա) վեկտոր. մեծություն է, որը թվապես հավասար է F ուժի մոդուլի և O կետից այն ուղղի ունեցած h ամենակարճ հեռ–յան արտադրյալին, որի երկայնքով գործում է այդ ուժը. $M_o = F \cdot h$ (h–ը կոչվում է ուժի բազուկ): $\vec{M}_o$ վեկտորն ուղղահայաց է O կետով անցնող հարթությանը և $\vec{F}$ ուժին, այսինքն՝ $\vec{M}_o = \vec{r} \cdot \vec{F}$, որտեղ $\vec{r}$ –ն O կետից մինչև $\vec{F}$ ուժի կիրառման կետը տարված վեկտորն է: Մ. ու. OO′ առանցքի նկատմամբ հանրահաշվ. մեծություն է, որը հավասար է նրա պրոյեկցիային այդ առանցքի վրա՝ OO′ առանցքի վրա գտնվող ցանկացած O կետի նկատմամբ, կամ $\vec{F}$ ուժի $\vec{Q}$ մոմենտի (նկ. բ) պրոյեկցիայի թվային արժեքին OO′ առանցքին ուղղահայաց հարթության վրա՝ այդ առանցքի և հարթության հատման կետի նկատմամբ:



ա բ

ՄՈՄԵՆՏ ՈՒՂԵՂՐԱՅԻՆ, միկրոմասնիկի անկյուն. մոմենտ (շարժման քանակի մոմենտ), որը պայմանավորված է նրա շարժումով գնդոլորտային համաչափությամբ արտաքին ուժ. դաշտում: Քվանտ. մեխանիկայի համաձայն՝ Մ. ու. քվանտացված է, այսինքն՝ M_l մեծությունը և նրա M_{lz} պրոյեկցիան տարածության մեջ կամայական ընտրված z առանցքի վրա կարող են ընդունել միայն վերջավոր արժեքներ՝ $M_l^2 = \hbar^2 l(l+1)$, $M_{lz} = m\hbar$, որտեղ ħ–ը Պլանկի հաստատունն է, l–ն ամրողջ. ոչ բացաս. թվեր են, իսկ m–ը կարող է ընդունել 2l+1 արժեքներ՝ +l–ից –l՝ 1 միջակայքով:

ՄՈՄՍԷՆ (Mommsen) Թեոդոր Քրիստիան Մարիաս (1817–1903), գերմանացի պատմաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1893): Աշխ–ները վերաբերում են Հին Հռոմի պատմությանը և հռոմ. իրավունքին: «Հռոմի պատմությունը» աշխ–յան մեջ բազմիցս անդրադարձել է Հայաստանի պատմությանը, հռոմեահայկ. հարաբերություններին: Նոբելյան մրց. (1902, գրկ.):

ՄՈՄԻԿ, Մոմիկ Վարդպետ, XIII դ–ի վերջ–XIV դ–ի 1–ին կեսի գրիչ, մանրանկարիչ, քանդ., ճարտ.: Գլաձորի մանրանկարչության դպրոցի ներկայացուցիչ: Ստեղծագործել է Վայոց ձորի Աղրերց վանքում, Նորավանքում, հավանաբար՝ նաև Կիլիկիայում: Նրա անունը հիշատակվում է 1283–ից (Վնն մտնդ., ձեռ. № 571), մասնակցել է խորանների ծաղկմանը: 1292–ի Ավետարանի (Մտնդ., ձեռ. № 2848) և՛ գրիչն է, և՛ ծաղկողը: Հավանաբար ծաղկել է նաև 1283–ին ընդօրինակված *«Կեռան թագուհու Ավետարանը»*: 1307–24–ին գրաղվել է քանդ–յամբ և ճարտ–յամբ: Մ. Արենիի Սբ Աստվածածին եկեղեցու (1321) ճարտ–ն է, ստեղծել է նաև 2 խաչքար (1303–ից հետո և 1308, Էջմիածին): Նրան են վերագրում նաև խաչքարի մի բեկոր (Եղեգնաձորի թանգարան), Նորավանքի Սբ Ստեփանոս Նախավկա եկեղեցու գավթի մուտքի և լուսամուտի ճակատի քանդակները, «Բուրթելաշեն» եկեղեցու բարձրաքանդակները, նաև Տաթևի վանքի Սբ Գրիգոր փոքր եկեղեցին (1295), Եղեգիսի Զորաց, Նորավանքի Սբ Աստվածածին եկեղեցիները ևն:

ՄՈՄՋՅԱՆ Խաչիկ Նշանի (1909–1996), փիլ.: Փիլ. գիտ. դ–ր (1951), պրոֆ. (1956): ՌԴ գիտ. վաստ. գործիչ (1969): Կարեն *Մոմջյանի* հայրը: 1951–53–ին՝ «Լրաբեր հասարակական գիտությունների» պարբ–ի խմբ.: Աշխ–ները վերաբերում են XVIII դ–ի ֆրանս. մատերիալիզմի և աթեիզմի պատմությանը, հաս–յան պատմ. զարգացման օրինաչափություններին («XVIII դարի ֆրանսիական լուսավորականությունը», 1983, ևն):

ՄՈՄՋՅԱՆ Կարեն Խաչիկի (ծ. 1948), փիլ.: Փիլ. գիտ. դ–ր (1989), պրոֆ. (1990): Խաչիկ *Մոմջյանի* որդին: Աշխ–ները վերաբերում են հասարակագիտ–յան մեթոդաբան. հիմնախնդիրներին, սոցիալ. համակարգերի վերլուծության կառուցվածքագործառութ. սկզբունքներին, գործունեության սոցիալ–փիլ. հայեցակարգին («Մարդ: Հասարակություն: Պատմություն: Հասարակագիտություն», 2001, ևն):

ՄՈՅՎԱ (Mallotus villosus), *սաղմնևիկնևրի* ընտանիքի ծով. ձուկ: Երկ.՝ մինչև 22 *սմ*, կ. զ.՝ մինչև 17 *գ*: Ապրում է Ատլանտ. և Խաղաղ օվկ–ների հս. մասերում և հս. ծովերում: Արդյունագործ. ձուկ է:

ՄՈՅՐԱՆՆԵՐ, *Զևսի* և *Թեմիսի* 3 դուստրերը հուն. դից–յան մեջ, ճակատագրի աստվածուհիները: Ըստ ավանդության՝ Կլոթոն մանում է կյանքի թելը, Լաքեսիսն այն տանում է կյանքի բոլոր ձախորդությունների միջով, իսկ Ատրոպոսը, կտրելով թելը, ընդհատում է մարդու կյանքը: Մ–ին համապատասխանում են հռոմ. Պարկենները:

ՄՈՆԱԴ (հուն.՝ monas – սեռ, monados – միավոր, անբաժանելի), կեցության հիմնարար տարրերը տարբեր փիլ. ուսմունքներում, թիվը՝ պյութագորասականների ուսմունքում, միասնականը՝ նորպլատոնականության մեջ, կեցության միասնական սկիզբը՝ Ջ. Բրունոյի պանթեիզմում, հոգեկան ակտիվ նախահիմքը (սուբստանցիա)՝ Գ. Լայբնիցի Մ–աբանության մեջ, որն ընկալում և արտացոլում է այլ Մ–ներ և ողջ աշխարհը:

ՄՈՆԱԿՈ (Monaco), **Մոնակոյի Իշխանություն**, պետություն Հվ. Եվրոպայում: Սահմանակից է Ֆրանսիային: Տարածքը՝ 2 *կմ²*, բն.՝ 37,2 հզ. (2014): Մայրաքաղաքը՝ *Մոնակո*: Պետ. լեզուն՝ ֆրանս.: Կառավարման ձևը՝ սահմանադրամիապետ.: Պետության գլուխը իշխանն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է: Բաժանված է 3 վարչ. կոմունաների: Անդամակցում է ՄԱԿ–ին: Բարձրզարգացած երկիր է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 30 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է տեքստիլ, արդ. ապրանքներ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ եվրո:

XII դ–ի վերջից մինչև XVI դ–ի սկիզբը Մ. եղել է Ջենովայի վերահսկողության ներքո: Որպես իշխանություն՝ հայտնի է 1419–ից: 1524–1641–ին եղել է իսպ. տիրապետության տակ, ապա՝ ֆրանս. պրոտեկտորատ (1793–1814–ին՝ Ֆրանսիայի կազմի մեջ): 1814–15–ի Վիեննայի վեհաժողովի որոշմամբ Մ. անցել է Սարդինիայի թագավորության հովանավորության տակ (մինչև 1849–ը): 1861–ի պայմանագրով Ֆրանսիան պաշտոնապես ճանաչել է Մ–ի անկախությունը: Ֆրանսիայի հետ հարաբերությունները կարգավորվում են համաձայնագրերով (1951, 1963, 2002): 2002–ի պայմանագրով Ֆրանսիան երաշխավորել է Մ–ի ինքնիշխանությունը՝ իշխող Գրիմալդի հարստության խափանման դեպքում:

ՄՈՆԱԿՈ, համանուն պետության մայրաքաղաքը: Բն.՝ շուրջ 1 հզ. (2010): Գործում են Օվկիանոսագր. ինստ–ը (թանգարանով և ակվարիումով), Նախապատմ. մարդաբան. թանգարանը: Կան XVI–XVIII դդ–ի բնակելի թաղամասեր: Ճարտ. նշանավոր կառույցներից են իշխան. պալատը (XIII–XIX դդ.), Լա Միզերիկորդ կապելան (XVII դ.):

ՄՈՆԲԼԱՆ (ֆրանս.՝ Mont Blanc, իտալ.՝ Monte Bianco), լ–զանգված Արմ. Ալպերում: Զգվում է Ֆրանսիայի, Իտալիայի և Շվեյցարիայի սահմաններով՝ հվ–արմ–ից հս–արլ.՝ 50 *կմ* երկ–յամբ: Բարձր.՝ մինչև 4807 *մ* (Ալպերի և Արմ. Եվրոպայի ամենաբարձր գագաթը): Ժամանակակից սառցապատման մակերեսը ավելի քան 200 *կմ²* է: Լեռնագնացության և զբոսաշրջության կենտրոն է: Մ–ի վրա կան աստղադիտարան և օդերևութաբան. կայան: Մ–ի տակով ձգվում է ֆրանս–իտալ. ավտոմայրուղու թունելը (երկ.՝ 11,6 *կմ*):

ՄՈՆԳՈԼՖԻԵ (Montgolfier), օդապարիկի ֆրանսիացի գյուտարար–եղբայրներ: **Ժոզեֆ Միշել Մ.** (1740–1810) և **Ժակ Էթիեն Մ.** (1745–1799): 1783–ին կառուցել են տաք

ծխով լցված օդապարիկ: Մարդկանց առաջին թռիչքն այդ օդապարիկով տեղի է ունեցել 21.11.1783-ին Փարիզում:

ՄՈՆԳՈՆՆԵՐ, ժողգ Կոնգոյի ԺՀ-ում: Ընդհ. թիվը՝ մոտ 12 մլն (2010): Խոսում են բանտու լեզուների կենտր. խմբի լեզվով: Հավատացյալների զգալի մասը քրիստոնյա է (կաթոլիկ), արևադարձ. անտառներում բնակվողները պահպանում են նախնադար. պաշտամունքի տարրեր:

ՄՈՆԴՐԻԱՆ (Mondrian) Պիտ (1872–1944), նիդեռլանդացի գեղանկարիչ: «Դե Սթեյլ» խմբի հիմնադիրներից, նեոպլաստիցիզմի սկզբնավորողը: Հեղինակ է սպեկտրի հիմն. գույնով ներկած ուղղանկյուն հարթություններով և ուղղահայաց գծերով աբստրակտ կոմպոզիցիաների:

ՄՈՆԵ (Monet) Կլոդ (1840–1926), ֆրանսիացի գեղանկարիչ: Իմպրեսիոնիզմի ներկայացուցիչ: Հեղինակ է նուրբ գուներանգով, լույսով և օդով տոգորված բնանկարների. ձգտել է դրոշմել օրվա տարբեր ժամերի լուսաոդ. միջավայրի անցողիկ վիճակները («Խոտի դեզ», 1890–91, շարք, «Ռուանի տաճարը», 1892–94):

ՄՈՆԵԼ–ՄԵՏԱՂ [ամերիկ. արդյունաբերող Ա. Մոնելի (A. Monell) անունով], նիկելի համաձուլվածքը պղնձի (27–28 %), երկաթի (2–3 %) և մանգանի (1,2–1,8 %) հետ: Ունի մեծ կոռոզիակայունություն և մեխ. ամրություն, լավ պլաստիկություն: Օգտագործվում է քիմ., նավաշին., բժշկ., նավթ., տեքստիլ և արդ-յան այլ բնագավառներում:

ՄՈՆԵՏԱՐԻԶՄ, տնտեսագիտ. տեսություն, որը շրջանառվող դրամ. զանգվածը դիտարկում է որպես տնտ. կոնյունկտուրայի ձևավորման որոշիչ գործոն: Մ. սահմանում է դրամի քանակության և ՀՆԱ-ի մեծության փոփոխությունների պատճառ. կապը: Առաջացել է ԱՄՆ-ում 1950-ական թթ-ին՝ որպես ***քեյնսականության*** հակոտնյա տեսություն: Մ-ի առաջատար ներկայացուցիչն ամերիկացի տնտեսագետ Մ. ***Ֆրիդմենն*** է:

ՄՈՆԵՐ, մոն-քմերյան ժողգ Մյանմայում (Մոն նահանգ, 750 հզ., 2010) և Թաիլանդում (120 հզ.): Լեզուն՝ մոներեն: Հավատացյալները հիմնականում բուդդայական են:

ՄՈՆԹԱՆԱ (Montana), նահգ ԱՄՆ-ի արմ-ում: Տարածքը՝ 380,8 *կմ*², բն.՝ 1 մլն (2013): Վարչ. կենտրոնը՝ Հելենա:

ՄՈՆՏԵՐԵՅ (Monterrey), ք. Մեքսիկայի հս-ում, Նուևո Լեոն նահգ-ի վարչ. կենտրոնը: Բն. 1,1 մլն (արվարձաններով՝ մոտ 4 մլն, 2010): Տրանսպորտ., արդ. և ֆին. կարևոր կենտրոն է: Ունի միջազգ. օդանավակայան, համալսարան: Ջրոսաշրջային կենտրոն է: Հիմնադրվել է XVI դ-ում:

ՄՈՆԺ (Monge) Գասպար (1746–1818), ֆրանսիացի մաթեմատիկոս և ճարտարագետ: Փարիզի Բարձրագույն նորմալ և Պոլիտեխ. դպրոցի հիմնադիրներից (1794): Աշխ-ները վերաբերում են դիֆերենցիալ երկրչփ-յանը և դիֆերենցիալ հավասարումներին: Ստեղծել է ***գծագրական երկրաչափությունը***:

ՄՈՆԻԶՄ (հուն.՝ monos – մեկ, միակ), աշխարհի երևույթների բազմազանությունը դիտարկելու միջոց՝ ողջ գոյավորի միակ հիմքի (սուբստանցիա) լույսի ներքո: Մ-ի հակոտնյաներն են ***դուալիզմը*** և ***պլյուրալիզմը***:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳ (անգլ.՝ monitoring, < հուն. monitor – նախազգուշացնող, հիշեցնող), շրջակա միջավայրի վիճակի վերահսկողության, որակի գնահատման, ինչպես նաև կենսամիջավայրի, էկոհամակարգերի և մարդու առողջության վրա մարդահարույց ու բնական գործոնների բացաս. ազդեցությունների կանխատեսման և կանխարգելման, ժամանակին հայտնաբերման ու վերացման նպատակով իրականացվող կանոնավոր երկարատև դիտարկումների համակարգ:

ՄՈՆԻՇ (Moniz) Անտոնիու Կաետանու դի Աբրեու Ֆրեյրի Էգաշ (1874–1955), պորտուգալացի նյարդախտաբան և նյարդավիրաբույժ: Աշխ-ները վերաբերում են անոթագրությանը: Առաջինն է կիրառել որոշ հոգեկան հիվանդությունների վիրաբուժ. բուժման մեթոդներ: Նոբելյան մրց. (1949):

ՄՈՆԻՉԵԼԼԻ (Monicelli) Մարիո (1915–2010), իտալացի կինոռեժ., սցենարիստ: 1935-ից՝ կինոյում: Տոտոյի մասնակցությամբ նկարահանել է (Մտենոյի հետ) «Ոստիկաններ և գողեր» (1951) և այլ կատակերգ. ֆիլմեր: Այլ կինոնկարներից են՝ «Մեծ պատերազմ» (1960), «Ընկերներ» (1963), «Գնդապետներին ենք ուզում» (1973), «Ժողովրդական սիրավեպ» (1974), «Պետք է հուսանք, որ աղջիկ է ծնվելու» (1986), «Անապատի վարդերը» (2006) ևն:

ՄՈՆԻՏՈՐ (լատ.՝ monitor – հիշեցնող, հսկող), ցուցասարք (դիսփլեյ), որտեղ տեղեկույթը պատկերվում է էլեկտրոնա-ճառագայթ. սարքի էկրանին:

ՄՈՆԿՐԵՏԻԵՆ (Montchrétien) Անտուան դը (մոտ 1575–1621), ֆրանսիացի տնտեսագետ: Ներմուծել է «քաղաքատնտեսություն» եզրույթը (1615): Հանդես է եկել առևտրի ընդլայնման օգտին, պաշտպանել առևտրականների՝ մեծ շահույթի ստացման գաղափարը, պահանջել սահմանափակել օտարերկրյա վաճառականների գործունեությունը:

ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԲԺԵՐ, կապտավուն երանգով հատվածներ երեխաների սրբանի շրջանի մաշկի վրա: Առաջին անգամ նկարագրվել է մոնղոլոիդ ռասայի մոտ, սակայն բնորոշ է նաև եվրոպեոիդ երեխաներին:

ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԳԻՐ, մոնղոլների՝ ույղուրներից XII–XIII դդ-ում փոխառած այբուբենը (ույղուր. գիր): Օգտագործել են բոլոր մոնղ. ցեղերը: Գրի ուղղությունը վերից վար է, տողերը կարդացվում են աջից ձախ: XX դ-ի կեսից Մոնղոլիայում Մ. գ. փոխարինվել է ռուս. այբուբենի հիմքով գրով:

ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, մոնղոլների լեզուները, ինքնուրույն լեզվաընտանիք. ներառում է մոնղ-ը, բուրյաթ-ը, կալմիկ-ը, մոնգոր-ը, դունսյան-ը, դագուր-ը, բաոան-ը ևն: Տարածված են Մոնղոլիայում, Չինաստանում, Ռուսաստանում, Աֆղանստանում:

ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԽԱՇԿՏԻԿ (Rodophechys mongolica), ***ավրինոսների*** ընտանիքի թռչուն: Հաարավոր բնադրող է, չվող: Սարմնի երկ. 13, թևերի բացվածքը՝ 25,5–27,5 *սմ*: ՀՀ-ում հայտնաբերվել է 1996-ին՝ Վեդիից հվ-արմ. ընկած տարածքում: Կենսակերպը լրիվ ուսումնասիրված չէ:

ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ, աշխարհակալ տերություն, կազմավորվել է XIII դ-ի 1-ին կեսին՝ ***Չինգիս խանի*** ու նրա ժառանգորդների նվաճող. պատերազմների արդյունքում: Սանգու (Սունքե) խանի օրոք (1251–59) Մ. կ-յանը միացվել են Մոնղոլիայի, Հս. Չինաստանի, Կորեայի, Սի Սյա տունգուս. թագավորության, Կենտր. և Միջին Ասիայի, Այսրկովկասի, Հայաստանի, Իրանի, Աֆղանստանի և այլ տարածքներ: Ռուսիայի զգալի մասը կախման մեջ է ընկել ***Ոսկե Հորդայից***: XIII դ-ի կեսերին սկսվել է Մ. կ-յան տրոհումը. XIV դ-ի վերջին քաոորդին այն դադարել է գոյություն ունենալուց:

Մոնղ. տիրապետությունը Հայաստանում տևել է 1230-ական թթ-ի վերջից մինչև XIV դ-ի 2-րդ կեսը: 1256-ից երկիրն ընդգրկվել է ***Հուլավուի*** հիմնադրած ***Իլխանության*** կազմում: Հայ և վրաց իշխանները 2 անգամ (1249, 1259–61) ապստամբել են մոնղ. լուծը թոթափելու համար, սակայն անհաջող: Մոնղ. տիրապետությունը կասեցրել է Հայաստանի հաս-տնտ. և մշակութ. զարգացումը: Մոնղոլների և Կիլիկիայի հայկ. թագավորության հարաբերությունների մասին տես ***Հայ–մոնղոլական դաշինք 1254*** հոդվածում:

ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՁԻ, տափաստան. հնագույն ծագման տեղական, հեծկան-լծկան ձի: Ցածրահասակ են, դիմացկուն, հարմարված են շուրջտարյա երամակային պահվածքի պայմաններին: Օգտավործում են նաև որպես մսատու և կաթնատու կենդանի: Բուծվում է Մոնղոլիայում:

ՄՈՆՂՈԼԵՐԵՆ, Մոնղոլիայի պետ. լեզուն: Պատկանում է ***մոնղոլական լեզուներին***:

ՄՈՆՂՈԼ–ԹԱԹԱՐԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐ, տես ***Բաթու խանի արշավանքներ***:

ՄՈՆՂՈԼԻԱ (Մոնղոլ Ուլս), պետություն Արլ. Ասիայում: Սահմանակից է ՌԴ-ին և Չինաստանին: Տարածքը՝ 1,564 մլն *կմ*², բն.՝ 3 մլն (2014): Մայրաքաղաքը՝ ***Ուլան Բատոր***: Պետ. լեզուն՝ մոնղ.: Կառավարման ձևը՝ խորհրդարանահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը (Պետ. մեծ խուրալ): Հավատացյալների մեծ մասը բուդդայական է: Բաժանված է 18 վարչ. այմակների: Անդամակցում է ՄԱԿ-ին, ԱտոՀԿ-ին, ԱՀԿ-ին ևն: Անցում. տնտ-յամբ երկիր է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 5,4 հզ. ԱՄՆ դոլար է (2012): Արտահանում է պղնձի, մոլիբդենի, վոլֆրամի խտանյութ, հագուստ, խեկ-ներ, ածուխ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, սննդամթերք, քիմիկատներ, դեղորայք ևն: Դրամ. միավորը՝ տուղրիկ:

Մ-ի տարածքում առաջին ցեղ. միությունը եղել է նախամոնղ. հուննու ցեղերի միությունը (մ. թ. ա. III – մ. թ. I դդ.), որին հաջորդել է սյանբի ցեղերի միությունը: Ավատատիրությունը զարգացել է Ժուժան., Թյուրք., Ույղուր., Ղրղզ. խաքանություններում, ապա՝ Լյաո կայսրությունում (կիդանիների պետություն, X–XII դդ.), որը, բացի Մ-ից, ընդգրկել է նաև Չինաստանի մի մասը: Լյաո կայսրության կործանումով (1125) սկիզբ է դրվել բուն մոնղ. իշխանությունների ու խանությունների կազմավորման: XII դ-ի վերջ–XIII դ-ի սկզբին Նոյոն Թեմուչինը հաղթել է իշխանության համար պայքարում և 1206-ին հռչակվել մեծ խան՝ ***Չինգիս խան*** (1206–27): XIII դ-ի կեսին մոնղոլները նվաճել են Հս. Չինաստանը, Միջին Ասիան, Իրանը, Այսրկովկասը, Հայաստանը, Ռուսիան, իսկ 1470-ական թթ-ին՝ ամբողջ Չինաստանը: XVI դ-ի վերջ–XVII դ-ի սկզբին մոնղոլներն ընդունել են լամայականություն: XVII դ-ի

սկզբին՝ներկայի Չինաստանի հս–արլ–ում պետություն ստեղծած մանջուր. իշխանները 1636–ին նվաճել են Հվ. Մոնղոլիան և այն անվանել Ներքին Մ.՝ ի տարբերություն Խալխայան Մ–ի (Մ–ի ներկայի տարածքը), որն անվանել են Արտաքին Մ.: 1691–ին մանջուր. Ցին հարստության (1644–1911, հիմնադրվել է Չինաստանը նվաճելուց հետո) իշխանությանն է անցել նաև Խալխայան Մ.: XVIII դ–ի կեսին մանջուրները նվաճել են մոնղ. վերջինս անկախ իշխանությունը՝ Օյրաթական խանությունը (ստեղծվել էր XVII դ–ի 30–ական թթ–ին): XIX դ–ի վերջ–XX դ–ի սկզբին Մ–ին տիրելու համար պայքարել են Ճապոնիան և Ռուսաստանը: 1911–ին ստեղծվել է մոնղ. կրոնապետություն, որին, սակայն, ոչ մի պետություն չի ճանաչել: Այն 1915–ին հարկադրված համաձայնել է մնալ Չինաստանի կազմում՝ որպես ինքնավար տարածք: 1918–ին Արտաքին Մ. գրավել են ճապոնամետ չին. Անհոյան կլանի զորքերը, որոնց 1919–ին երկրից դուրս է մղել Ռ. Ֆ. Ունգեռն ֆոն Շտեռնբերգի դիվիզիան՝ ստեղծելով հակախորհրդ. բռնապետ. վարչակարգ: 1921–ին Մ. են մտել Կարմիր բանակի զորքերը և մոնղ. հեղ. ուժերի հետ ազատագրել երկիրը սպիտակգվարդ. կազմավորումներից և չին. նվաճողներից: Նույն տարում Մ. հռչակվել է անկախ պետություն, 1924–ին՝ Մոնղ. Ժող. Հանրապետություն (երկրի անվանումը՝ մինչև 1992–ը): 1939–ին Ճապոնիան սկսել է ռազմ. գործողություններ Մ–ի դեմ: Մոնղ. զորքերը Կարմիր բանակի հետ Խալխին Գոլ գետի շրջանում ջախջախել են ճապոն. զորքերին, հետագայում մասնակցել Ճապոնիայի Կվանտունյան բանակի ջախջախմանը (1945–ի օգոստ.): 1960–ին Մ. հռչակվել է սոց. պետություն՝ միակուս. (Մոնղ. ժող–հեղ. կուս–յան, հիմն.՝ 1921) կառավարմամբ: 1980–ական թթ–ին սկսվել են հաս. կյանքի ժողովրդավարացման գործընթացներ: 1990–ին ձևավորվել է կոալիցիոն կառ–յուն: 1992–ին ուժի մեջ է մտել նոր սահմանադրությունը, որով երկիրը կոչվել է Մ.: 1992–96–ին, 2000–04–ին երկիրը ղեկավարել է Մոնղ. ժող–հեղ. կուս–յունը (ՄԺՀԿ), 1996–98–ին՝ կենտրոնամետ և աջ ուժերի դաշինքը, 1998–2000–ին՝ Մոնղ. ազգ–ժողովրդավար. կուս–յունը, 2004–ից՝ ՄԺՀԿ և Մոնղ. ազգ–ժողովրդավար. կուս–յան դաշինքը: 2008–ից դաշինքից դուրս է եկել ՄԺՀԿ: 2009–ին նախագահ է ընտրվել ընդդիմության ներկայացուցիչ Ցախիագիյն Էլբեգդորժը:

ՄՈՆՂՈԼՈՒԴ ՌԱՍԱ, **ասիաամերիկյան ռասա**, մարդկային մեծ ռասաներից: Տարբերվում է սև, ուղիղ, կոշտ, երբեմն՝ ալիքաձև մազերով, մուգ աչքերով, մաշկի թուխ, հաճախ՝ դեղնավուն գույնով, թույլ զարգացած երրորդական մազածածկույթով, այտոսկրների խիստ ցցվածությամբ, հարթ դեմքով, մեծ մասամբ՝ ցածր քթարմատով, վերին կոպի խիստ զարգացած ծալքերով են: Տարածված է Ասիայում: Երբեմն Մ. ռ–ի մեջ են ներառում նաև ամերիկանոիդ ռասան (ինդկացիներ):

ՄՈՆՅՈՒՇԿՈ (Moniuszko) Ստանիսլավ (1819–1872), լեհ կոմպոզիտոր, դիրիժոր: Լեհ. ազգ. առաջին սիմֆ. երկերի հեղինակը: Լեհ. ազգ. օպեր. դպրոցի հիմնադիրը: Հեղինակ է 15–ից ավելի օպերաների («Հալկա», 1847, 2–րդ խմբագրությունը՝ 1858, «Կախարդված դղյակը», 1865, ևն), կանտատների, բալետների, մեսսաների, շուրջ 10 օպերետի, վոդևիլների, նախերգանքների, կանտատների, խմբերգերի և այլ գործերի:

ՄՈՆՈ (Monod) Ժակ Լյուսիեն (1910–1976), ֆրանսիացի կենսաքիմիկոս և մանրէաբան: Բակտերիային բջջում գենետիկ. տեղեկույթի փոխանցման և սպիտակուցի սինթեզի գենետիկ. կարգավորման մեխանիզմների մասին վարկածի հեղինակներից է (օպերոնի հայեցակարգ):

Նոբելյան մրց. (1965, Ֆ. *Ժակոբի* և Ա. Մ. *Լվովի* հետ):

ՄՈՆՈ... (հուն.՝ monos – մեկ, միակ), բարդ բառերի մաս (օր.՝ ***մոնոպլան***, ***մոնոսոմիա***, ***մոնոֆիլիա*** ևն):

ՄՈՆՈԳԱՄԻԱ, (կենդբ.), արուի զուգավորումը միևնույն էգի հետ. սովորաբար Մ–ի ժամանակ արուն մասնակցում է սերունդների խնամքին: Մ. բնորոշ է թռչունների մեծամասնությանը (կարապները, արագիլները, արծիվները, անգղները զույգեր են կազմում մի քանի տարով, երբեմն՝ ամբողջ կյանքի համար), մի շարք կաթնասունների (կապիկները զույգեր են կազմում մի քանի տարով, գազանների մեծ մասը՝ 1 տարեշրջան):

ՄՈՆՈԳԵՆԵՏԻԿ ԾԾՈՂ ՈՐԴԵՐ (Monogenoidea), ***մոնոգենետներ***, մակաբույծ տափակ որդերի դաս: Երկ.՝ ***ակմ***–ի մասերից մինչև 2–3 ***սմ***: Հայտնի է մոտ 1100 տեսակ: Զարգացումը սովորաբար՝ առանց տերերը փոխելու և սերունդների հաջորդականության: Հիմնականում ձկների մակաբույծներ են (մնաս են պատճառում լճակային տնտ–յանը, ծով. մշակությանը (մարիկուլտուրա):

ՄՈՆՈԴԻԱ (հուն.՝ monodia – մեներգեցողություն), 1. մեկ երգչի երգեցողությունը Հին Հունաստանում՝ առանց նվագակցության, նաև ավլոսի, կիֆարայի կամ քնարի նվագակցությամբ: 2. Մեներգեցողության հաստատված ոճ Իտալիայում (XVI դ–ից): 3. Ընդհանրապես միաձայն երգեցողությունը կամ դրա ոճով հորինված միաձայն գործիք. նվագ: Հայկ. երաժշտագիտ–յան մեջ Քրիստափոր Քուշնարյանը Մ–ով բնութագրել է երաժշտ. այն ձևը, որը հիմնված է զուտ մեղեդիական (ոչ հարմոնիկ, ակորդ.) գործոնի վրա: Այս առումով՝ հայկ. ժող., հոգևոր և գուսանաաշուղ., նաև արլ. մի շարք ժողդ–ների երաժշտությունը Մ–ի բնորոշ նմուշներ են:

ՄՈՆՈԿԱՐՊ ԲՈՒՅՍԵՐ (< ***մոնո***... և հուն.՝ karpos – պտուղ), ծաղկում են կյանքում 1 անգամ և պտղակրությունից հետո ոչնչանում: Մոնոկարպ են միամյա և երկամյա բոլոր, բազմամյա՝ որոշ բույսեր (օր.՝ ագավա, հնդկեղեգ):

«ՄՈՆՈՄԱԽԻ ԳԴԱԿ», ինքնակալության խորհրդանիշը Ռուսաստանում, ոուս մեծ իշխանների և ցարերի թագը (ոսկե նրբահյուս սրածայր գլխարկ՝ խաչով, սամույրով, թանկարժեք քարերով, XIV դ., Մոսկվայի Կրեմլի Զինապալատ): Բյուզանդիայի կայսր Կոստանդին Մոնոմախն ուղարկել է իր թոռանը՝ Կիևի մեծ իշխան Վլադիմիր Մոնոմախին: Մ. գ–ով առաջինը թագադրվել է Իվան IV–ը (1547). սովորույթը պահպանվել է մինչև 1721–ը (Մ. գ. փոխարինվել է կայսեր. թագով):

ՄՈՆՈՄԵՐ (< ***մոնո***... և հուն.՝ meros – մաս), ցածրմոլ. նյութ, որի մոլ–ները կարող են միանալ միմյանց կամ այլ մոլ–ների հետ՝ առաջացնելով ***պոլիմերներ***:

ՄՈՆՈՆՈՒԿԼԵՈԶ ՎԱՐԱԿԻԶ, մարդու սուր վարակիչ հիվանդություն: Դրսևորվում է ավշահանգույցների մեծացմամբ, տենդով, անգինայով, արյան փոփոխություններով:

ՄՈՆՈՊԼԱԿՈՖՈՐՆԵՐ, խեցիավորների ենթատիպի ծով. փափկամարմինների դաս: 1952–ին Խաղաղ օվկ–ի արլ. մասում հայտնաբերվել է Մ–ի առաջին ժամանակակից ներկայացուցիչը՝ նեոպիլինների դասից: Այնուհետև գտնվել են Խաղաղ օվկ–ի այլ մասերում, Հնդ., Ատլանտ. օվկ–ներում: Մինչ այդ հայտնի էին Մ–ի միայն անհետացած պալեոզոյան տեսակներ: Հայտնի է մոտ 60 տեսակ, որոնցից այժմ ապրում են միայն 8–ը: Մարմինը ծածկված է թասակաձև խեցիով: Հատակային կենդանիներ են:

ՄՈՆՈՊԼԱՆ (< ***մոնո***... և լատ.՝ planum – հարթություն), իրանի 2 կողմում տեղակայված միաթև ինքնաթիռ: Ժամանակակից ինքնաթիռների հիմն. տեսակն է:

ՄՈՆՈՑԻՏՆԵՐ, լեյկոցիտների տիպերից: Ընդունակ են ֆագոցիտոզի, բորբոք. ռեակցիաների ժամանակ արյունից անցնելով հյուսվածքների մեջ՝ գործում են որպես մակրոֆագեր:

ՄՈՆՈՖԻԼԻԱ (< ***մոնո***... և phylon – ցեղ, սեռ), օրգանիզմների խմբի ծագումը միասն. ընդհ. նախնիից (ոչ թե ծնողների մեկ զույգից, այլ առանձնյակների միասեռ խմբից): Մ–ի ակնառու արտահայտությունն օրգ. բնության զարգացման պատմության պատկերումն է տոհմածառի ձևով:

ՄՈՆՊԵԼԻԵԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Ֆրանսիայի և Եվրոպայի հնագույն համալսարաններից: Հիմնադրվել է 1289–ին՝ բժշկության, իրավունքի, աստվածաբանության և փիլ–յան ֆակ–ներով: Ներկայում բաղկացած է Մոնպելիե I (իրավունք, տնտ., էկոլոգիա, կառավարում, բժշկություն), Մոնպելիե II (բնական գիտ–յուններ), Մոնպելիե III (Պոլ Վալերիի համալսարան, գրկ., լեզուներ, հումանիտար և սոցիալ. գիտ–յուններ) համալսարաններից: 2016–ին ուներ շուրջ 60 հզ. ուսանող:

ՄՈՆՏԱԼԵ (Montale) Էուջենիո (1896–1981), իտալացի բանաստեղծ, գրաքննադատ: Հեղինակ է «Սեպիների խեցիները» (1925), «Հանգամանքներ» (1939), «Փոթորիկ և այլ բանաստեղծություններ» (1956), «Սատուրա» (1971) և բանաստեղծությունների այլ ժող–ների, որոնք համակված են մարդասիր. մոտիվներով: Նոբելյան մրց. (1975):

ՄՈՆՏԱՆ (Montand) Իվ (Իվո Լիվի, 1921–1991), ֆրանսիացի դերասան, շանսոնիե: Ս. *Մինյորիի* ամուսինը: Նկարահանվել է «Վճարում վախի համար», «Պատերազմն ավարտված է», «Խոստովանություն», «Ապրել՝ ապրելու համար», «Վենասանը, Ֆրանսուան, Պոլը և ուրիշները», «Երկու տեղ 26–րդում» և այլ ֆիլմերում: Որպես շանսոնիե՝ անդրադարձել է Լ. Արագոնի, Գ. Ապոլիների, Պ. Էլյուարի, Ժ. Պրևերի պոեզիային: Իտալիայի «Դավիդ դի Դոնատելլո» մրց.:

ՄՈՆՏԱՆ ՊԵԼԵ (Montagne Pelée), գործող հրաբուխ Վեստ Ինդիայի Մարտինիկա կղզում: Բարձր.՝ 1397 *մ*: Հայտնի են 1902–ի աղետալի ժայթքումները:

ՄՈՆՏԱՆԻԵ (Montagnaier) Լյուկ (ծ. 1932), ֆրանսիացի վիրուսաբան: Առաջինն է առանձնացրել և բնութագրել (Ֆ. *Բառռ–Սինուսիի* հետ) մարդու իմուն. անբավարարության (ՄԻԱՎ) վիրուսը, որը հնա-

րավորություն է տվել հասկանալու այդ հիվանդության բնույթը և մշակելու ախտորոշման ու կանխարգելման մեթոդներ:

Նոբելյան մրց. (2008, ֆ. Բառե-Սինուսիի հետ):

ՄՈՆՏԳՈՄԵՐԻ (Montgomery) Բեռնարդ Լոու (1887–1976), դերկոմս (1946), բրիտանացի ֆլդմ. (1944): ԵՀՊ-ում 1942-ից՝ անգլ. 8-րդ բանակի հրամ., որը Էլ-Ալամեյնի ք-ի մոտ (Հս. Աֆրիկա) ջախջախել է գերմանա-իտալ. զորքերին: 1944–45-ին՝ 21-րդ բանակ. խմբավորման հրամ.: 1946–48-ին՝ կայսեր. ԳՇ պետ, 1951–58-ին՝ Եվրոպայում ՆԱՏՕ-ի ՋՈՒ-ի գլխ. հրամ-ի 1-ին տեղակալ:

ՄՈՆՏԵՅՐՈՒ ԼՈԲԱՏՈՒ (Monteiro Lobato) Ժոզե Բենտու (1882–1948), բրազիլացի գրող: Հեղինակ է «Ուրուպիս» (1918), «Մեռած քաղաքներ» (1919), «Նեգրուհին» (1920) պատմվածքների և հրապարակախոս. ակնարկների ժող-ների, «Էմիլիան՝ քերականության աշխարհում» (1930), «Դոնա Բենտայի աշխարհագրությունը» (1935) և այլ մանկ. պատմվածքների: Հայ. հրատարակվել է «Մորաքույր Նաստասիայի հեքիաթները» (1961) ժող-ը:

ՄՈՆՏԵՆ (Montaigne) Միշել դը (1533–1592), ֆրանսիացի փիլ., հումանիստ, գրող, Վերածնդի շրջանի ներկայացուցիչ: Փիլ. հարցերում առաջնորդվել է մարդաբան. սկզբունքով, պաշտպանել մտահայեցողության նկատմամբ «բնական բնության» և հոգու նկատմամբ մարմնի առաջնայնության չափանիշները: Մ-ի փիլ-բարոյագիտ. հետևությունն ըստ բնության և բանականության ապրելն է: Մ. մարդուն համարել է բարձրագույն արժեք:

ՄՈՆՏԵՍՔՅՈ (Montesquieu) Շառլ Լուի դը Սեկոնդա, **բարոն դը Լա Բրեդ** (1689–1755), ֆրանսիացի լուսավորիչ, փիլ., իրավագետ, գրող: Ֆրանսիայի ակադ-ի անդամ (1727): «Օրենքների ոգու շուրջը» (1748) հանրագիտ. երկում հիմք է դրել ***աշխարհագրական դետերմինիզմին***: Տարբերել է կառավարման 3 ճիշտ ձև՝ ժողովրդավար., արիստոկրատ., միապետ., նախապատվությունը տվել է սահմանադր. միապետությանը, որի՝ բռնակալության չվերածվելու ուղին համարել է «իշխանությունների բաժանումը» (Ջոն Լոքի հետ): Հեղինակ է նաև «Մտորումներ հռոմեացիների մեծության և անկման պատճառների մասին» (1734, հայ.՝ 1870) երկի, «Պարսկական նամակներ» (1721, հայ.՝ 2016) երգիծ. վեպի, նաև պոեմների ևն:

ՄՈՆՏԵՎԻԴԵՈ (Montevideo), ***Ուրուգվայի*** մայրաքաղաքը (1828-ից) և համանուն դեպարտամենտի վարչ. կենտրոնը, երկրի գլխ. նվինգստո-ը Լա Պլատա ծոցի ափին: Բն.՝ 1,33 մլն (արվարձաններով՝ 2 մլն, 2011): Գործում են միջազգ. օդանավակայան, նավթավերամշակման, մետաղամշակման, ցեմենտի, քիմ., տեքստիլ, կաշվի-կոշկեղենի արտադր. ձեռն-ներ: Մ. հիմնել են իսպանացիները 1726-ին:

Մ-ի հայ համայնքը հիմնել են 1924–25-ին այստեղ ապաստանած մարաշցի, այնթափցի, զեյթունցի և այլ հայ գաղթականներ: 2014-ին Մ-ում բնակվել են շուրջ 15–16 հզ. հայ: Ունեն համայնք. կրթամշակութ. կառույցներ, 1975-ին տեղադրել են Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթող:

ՄՈՆՏԻ (Monti) Վինչենցո (1754–1828), իտալացի բանաստեղծ, դրամատուրգ: Հեղինակ է «Մոլեռանդություն» (1797), «Հանուն Իտալիայի ազատագրության» (1801) հայրենասիր. պոեմների, նաև ողբերգությունների, այդ թվում՝ «Կայ Գրակխ» (1788–1801): Թարգմանել է ***«Իլիական»***-ը: Հայ. հրատարակվել է «Ողբերգութիւն Վ. Մոնթեայ Յարիստոդեմ» (1873) գործը:

ՄՈՆՏԻՉԵԼԼԻ (Monticelli) Ադոլֆ Ժոզեֆ Թոմ (1824–1886), ֆրանսիացի գեղանկարիչ: Ստեղծել է վառ երևակայությամբ, ոսկեգույն ու արծաթագույն գամմաների համադրությամբ շքեղ կոմպոզիցիաներ («Տոնահանդես հսկա էլոիզի հետ», 1875–1877), դիմանկարներ («Առլեզիանուհին», 1870–77), նատյուրմորտներ («Նռներ», 1880): Մ-ի գունաշարը մեծ ազդեցություն է ունեցել ֆովիստների (տես ***Ֆովիզմ***) վրա: Մ-ի «Զբոսանք» նկարը ՀԱՊ-ում է:

ՄՈՆՏՄՈՐԻԼՈՆԻՏ, կավ. միներալ շերտավոր սիլիկատների ենթադասից: Քիմ. կազմը փոփոխական է (Ca, Na)(Mg, Al, Fe_2][$(Si, Al)_4O_{10}$]$(OH)_2 \cdot nH_2O$: Առաջացնում է խիտ կավ. զանգվածներ: Սպիտակ է, վարդագույն, կապտագորշ, կարմիր, կանաչավուն՝ կախված խառնուրդներից: Կարծր.՝ 1–2 (չորի դեպքում), խտ.՝ 2000–3000 *կգ/մ³*: Բենթոնիտների գլխ. բաղադրամաս է:

ՄՈՆՏՐՅՈՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ 1936, տեղի է ունեցել (հունիսի 22–հուլիսի 21) Մոնտրյո (Շվեյցարիա) ք-ում: ԽՍՀՄ-ը, Թուրքիան, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան ստորագրել են համաձայնագիր Լոզանի խորհրդաժողովում (1922–23) Սևծով. նեղուցների վերաբերյալ սահմանված ռեժիմի վերանայման համար: Ընդունվել է հատուկ կանոնադրություն՝ խաղաղ պայմաններում նեղուցներով սևծով. երկրների ռազմանավերի ազատ երթևեկը սահմանափակելու համար:

ՄՈՆՐԵԱԼ (Montreal), ք. ***Կանադայի*** Քվեբեք նահց-ում՝ Սբ Լավրենտիոս գետի ափին: Բն.՝ 3,4 մլն (արվարձաններով, 2009): Ծով. նվինգստ է: Ունի միջազգ. օդանավակայան: Արդ., առևտրաֆին. խոշորագույն կենտրոն է: Գործում են մեքենաշինության, քիմ., նավթավերամշակման, սննդի, տեքստիլ արդ-յան ձեռն-ներ, զարգացած է գունավոր մետաղամշակությունը: Կան մետրո, 3 համալսարան, թանգարաններ (Ռամզե դեյակի, գեղեցիկ արվ-ների ևն): Մ-ում 1976-ին անցկացվել են XXI ձմեռ. օլիմպ. խաղերը: Հայտնի են Նոտր-Դամ-դը Բոն-Սեկուր (XVII–XVIII դդ.) եկեղեցին, դեյակը (XVIII դ.), սեմինարիայի շենքը (XVII դ.), 1967-ի համաշխ. ցուցահանդեսի շինությունները ևն: Հիմնադրել են ֆրանսիացիները 1642-ին:

Մ-ում հայերը հաստատվել են XIX դ-ի վերջից, որպես համայնք՝ ձևավորվել է XX դ-ի կեսին: 2014-ին Մ-ում բնակվել է 40 հզ. հայ, որոնք ունեն իրենց համայնք. կրթամշակութ. զանազան կառույցներ:

ՄՈՆՐԵԱԼԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Կանադայի խոշորագույն համալսարաններից, ֆրանսախոս տարածքի ամենամեծ բուհերից: Հիմնադրվել է 1878-ին: 2016-ին ուներ շուրջ 55 հզ. ուսանող:

ՄՈՆՐՈ Մերիլին (Նորմա Ջին Բեյքեր Մորտենսոն, 1926–1962), ամերիկացի դերասանուհի: Նկարահանվել է «Ինչպես ամուսնանալ միլիոնատիրոջ հետ», «Ոմանք առավել ջերմ են սիրում» (խորհրդ. էկրանին՝ «Ջազում միայն աղջիկներ են»), «Անհաջողակները» և այլ ֆիլմերում: 1950-ական թթ-ի ամենահայտնի ամերիկ. դերասանուհին էր: Նրա անձն. և ստեղծագործ. կյանքին է նվիրված «Մերիլին» կինոանթոլոգիան: Մահացել է չպարզաբանված հանգամանքներում:

ՄՈՆՐՈՅԻ ԴՈԿՏՐԻՆ, ԱՄՆ-ի կառ-յան արտաքին քաղ-յան ծրագիր. հռչակվել է 1823-ին՝ ԱՄՆ-ի նախագահ Ջ. Մոնրոյի ուղերձով: Հայտարարվել են աշխարհին ամերիկ. և եվրոպ. համակարգերի բաժանելու և փոխադարձաբար միմյանց ներքին գործերին չմիջամտելու սկզբունքները: Մ. դ. արգելել է եվրոպ. տերություններին գաղութ. տարածքներ ձեռք բերել Ամերիկա մայրցամաքում և միջամտել ամերիկ. անկախ պետությունների ներքին գործերին:

ՄՈՆՅՈՆԻՏ (Իտալիայի Մոնցոնի լ-ան անունով), բյուրեղ. խորքային մագմատիկ ապար: Կազմված է մոտավորապես հավասար քանակությամբ կալիում-նատրիում. դաշտ. սպաթից ու պլագիոկլազից և գունավոր միներալներից (մինչև 35 %): Օգտագործվում է որպես շինանյութ: ՀՀ-ում տարածված է նաև Մեղրու պլուտոնում, Փամբակի լ-զանգվածում և այլուր:

ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ ԱՐՎԵՍՏ, **կոթողային արվեստ**, տարած. արվ-ների բնագավառ, որի գործերն ստեղծվում են որոշակի ճարտ. միջավայրի համար և նրան համապատասխանում գաղափարով, տեսող-արխիտեկտոնիկ ու գունե. կառուցվածքով: Մ. ա-ի գործեր են ***հուշարձաններն*** ու ***կոթողները***, կառույցների քանդ., գեղանկարչ., խճանկարչ. հարդարանքը, վիտրաժները ևն:

ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ-ԴԵԿՈՐԱՏԻՎ ԱՐՎԵՍՏ, 1. ***մոնումենտալ արվեստի*** այն բնագավառը, որտեղ գերիշխում է դեկորատիվությունը: 2. Տերմինը երբեմն օգտագործվում է որպես մոնումենտալ արվ-ի հոմանիշ:

ՄՈՆ-ՔՄԵՐ ԼԵԶՈՒՆԵՐ, ցեղակից լեզուների խումբ: Պատկանում է ավստրասիական լեզվաընտանիքին: Ներառում է քմերերեն, մոներեն, պոար, ստիենգ, պալաունգ, քասի, նիկոբարերեն և այլ լեզուներ:

ՄՈՆՖԵՌԱՆ (Montferrand) Օգյուստ Ռիկար դը (1786–1858), ֆրանսիացի ճարտ., նկարիչ: 1816-ից՝ Ռուսաստանում: Ուշ կլասիցիզմի ներկայացուցիչ: Իսաակիևյան տաճարի (1818–58), Ալեքսանդրյան սյան (1830–34, երկուսն էլ՝ Ս. Պետերբուրգում) հեղինակն է:

ՄՈՇԵՆԻ (Rubus), ***վարդազգիների*** ընտանիքի բազմամյա խոտաբույսերի կամ թփերի ցեղ: Հայտնի է 600 տեսակ, ՀՀ-ում՝ 11 (անատոլիական, հայկ., սպիտակավուն, եղնևուտային, ցեզիուս ևն)՝ Տավուշի, Լոռու, Սյունիքի և այլ մարզերի ստորին ու միջին լեռն. գոտիներում, բնաշխարհիկ տեսակները (Թախտաջյանի, Զանգեզուրի, կովկաս. ևն)՝ Սյունիքի մարզում: Պտուղները պարունակում են շաքարներ, օրգ. թթուներ, աղաղանյութեր, վիտամիններ ևն:

ՄՈՇԿՈՎՍԿԻ (Moszkowski) Մաուրիցի (Մորից, 1854–1925), լեհ դաշնակահար, կոմպոզիտոր: Բեռլինի արվ-ների ակադ-ի անդամ (1899): 1897-ից՝ Փարիզում: Սալոն. վիրտուոզ կատարող. արվ-ի ներկայացուցիչ: Ճանաչված են Մ-ու կոնցերտ. էտյուդները, սալոն. կոնցերտ. պիեսները

(այդ թվում՝ «Իսպանական պարեր») և այլ գործեր:

ՄՈՈՆՋՈՒՆԴՅԱՆ ԿՂԶԵԽՈՒՄԲ, **Արևմտաէստոնական կղզեխումբ**, Բալթիկ ծովում (Էստոնիա): Տարածքը՝ 4000 *կմ*^{2}: Կազմված է Սաարեմաա, Հիյումաա, Մուհու, Վորմսի՝ խոշոր, և ավելի քան 500 փոքր կղզիներից: Գլխ. քաղաքը՝ Կինգիսեպ:

ՄՈՈՍԻ ՍԱՆԴՂԱԿ, մի‑ներալների հարաբեր. կարծրության 10‑բալլանոց սանդղակ: Բաղկացած է կարծրության 10 ստանդարտից. տալկ՝ 1, գիպս՝ 2, կալցիտ՝ 3, ֆլյուորիտ՝ 4, ապատիտ՝ 5, օրթոկլազ՝ 6, քվարց՝ 7, տոպազ՝ 8, կորունդ՝ 9, ալմաստ՝ 10: Հարաբեր. կարծրությունը որոշվում է փորձարկվող օբյեկտի մակերևույթը Մ. ս‑ի ստուգանմուշով խազելու միջոցով: Առաջարկել է (1811) գերմանացի մի‑ներալաբան Ֆ. Մոոսը (1773–1839):

ՄՈՉԱԼՈՎ Պավել Ստեպանովիչ (1800–1848), ռուս դերասան: 1817‑ից՝ Մոսկվայի կայսեր. թատրոնի (1824‑ից՝ Փոքր թատրոն) դերասան: Ճանաչվել է ողբերգ. դերերով (Հորացիոս՝ Պ. Կոռնելի «Հորացիոս», Ֆինգալ՝ Վ. Ա. Օզերովի «Ֆինգալ», Քին՝ Ա. Դյումա‑հոր «Քին», Կառլ Մոոր, Ֆերդինանդ՝ Ֆ. Շիլլերի «Ավազակներ», «Սեր և խարդավանք», Համլետ՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», ևն):

ՄՈՉՈՒԼՍԿԻ Կոնստանտին Վասիլևիչ (1892–1948), ռուս. գրականագետ, գրաքննադատ, էսսեագիր: 1919‑ից՝ վտարանդի: Հեղինակ է «Գոգոլի հոգևոր ուղին» (1934), «Վլադիմիր Սոլովյով: Կյանքը և ուսմունքը» (1936), «Դոստոևսկի: Կյանքը և ստեղծագործությունը» (1947) կրոնափիլ. մենագրությունների, «Ալեքսանդր Բլոկ» (1948), «Անդրեյ Բելի» (հրտ.՝ 1955), «Վալերի Բրյուսով» (հրտ.՝ 1962) աշխ‑ների:

ՄՈՉՈՒՐԿՈՎՍԿԻ Օսիպ Օսիպովիչ (1845–1903), ռուս բժիշկ: Իր վրա կատարած փորձերով ապացուցել է բծավոր և հետադարձ տիֆերով հիվանդների արյան վարակելիությունը:

ՄՈՊԱՍԱՆ (Maupassant) Գի դը (1850–1893), ֆրանսիացի գրող: Նովելի վարպետ («Ճարպագունդը», հայ.՝ 1913, «Մադմուազել Ֆիֆի», 1882, հայ.՝ 1897, «Հայր Միլոնը», 1883, հայ.՝ 1902, ևն): Հեղինակ է նաև «Մի կյանք» (1883, հայ., 1901), «Սիրելի բարեկամ» (1885, հայ.՝ 1911, 1953), «Մահվան պես հզոր» (1889, հայ.՝ 1961), «Մեր սիրտը» (1890) և այլ վեպերի, «Մուրացկան» (հայ.՝ 1894), «Սատանա» (հայ.՝ 1912), «Ցերեկվա և գիշերվա պատմություններ» պատմվածքների ժող‑ի, ակնարկների և այլ գործերի: Մ‑ի նովել‑ները բազմիցս բեմադրվել են: Հայ. հրատարակվել են նաև «Վիպակներ» (1923), «Ընտիր պատմվածքներ» (1935), «Ընտիր երկեր» (1950) և այլ ժող‑ներ:

ՄՈՊԵԴ [ռուս.՝ мо (тор) և пед (ель)], նաշով (աշխ. ծավալը՝ մինչև 50 *մ*^{3}) երկանիվ կամ եռանիվ հեծանիվ՝ հետևի անվի ոտնակային շղթ. փոխանցումով: Շարժիչը սովորաբար միացլան, երկտակտ է, հզորությունը՝ մոտ 1,5–5 *կՎ*: Արագությունը՝ մինչև 40 *կմ/ժ*:

ՄՈՊԵՐՏՅՈՒԻ (Maupertuis) Պիեռ Լուի Մորո դը (1698–1759), ֆրանսիացի մաթեմատիկոս, բնագետ: Ֆրանսիայի ԳԱ (1743), Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. (1737/38) անդամ: 1736–37‑ին ղեկավարել է աստիճան. չափումների Լապլանդ. արշավախումբը: Առաջինն է ձևակերպել *փորրագույն գործողության սկզբունքը* (1744):

ՄՈՊՍ, շների ցեղ: Ենթադրաբար ծագել է Չինաստանում: Ոչ մեծ, հավաք մարմնով, մկանուտ շուն է: Գլուխը զանգվածեղ է, կնճիռներով և կտրուկ արտահայտված անցումով՝ ճակատից դեպի կարճ դունչը: Բուրդը կարճ է, շեկ, մոխրագույն (երկուսն էլ՝ «սև դիմակով» և ականջների վրա մգացումով) կամ սև: Ընկերակցող շուն է:

ՄՈՋԵՎՍԿԻ, Մոջևսկի‑Ֆրիչ (Modzewski‑Frycz), Անջեյ (1503–1572), լեհ հումանիստ: Հեղինակ է «Պետության վերափոխման մասին» (1551, ներկայացրել է հաս. վերակառուցման մարդասիր. ծրագիր, պապ. կուրիան արգելել է) աշխ‑յան, որը մեծ ազդեցություն է թողել եվրոպ. հաս. մտքի վրա:

ՄՈՋՈՐՅԱՆ (Մոջոռյան) Լիդիա Արտեմի (1911–1996), իրավաբան: Իրավաբ. գիտ. դ‑ր (1954), պրոֆ. (1957): Աշխ‑ները վերաբերում են միջազգ. իրավունքի հարցերին:

ՄՈՌԱՍ (Maurras) Շառլ (1868–1952), ֆրանսիացի հրապարակախոս, քննադատ, բանաստեղծ: Ֆրանսիայի ակադ‑ի անդամ (1938–45): Ազգ‑միապետ. և կաթոլիկ. գաղափարների ջատագով («Հարցում միապետության առիթով», 1900–09, ևն): Հիմնվելով XVII դ‑ի կլասիցիզմի «կարգապահության» («կարգ ու կանոնի») գեղագիտ‑յան վրա՝ «Ճանապարհ դեպի դրախտ» (1894), «Բանականության ապագան» (1905) աշխ‑ներում քննադատել է ռոմանտիզմը, «Հանուն Պսիքեայի» (1911), «Մակագրություններ» (1921) բանաստեղծ. ժող‑ներում պաշտպանել է վերադարձը «ֆրանսիական պարզության» (Մ. «ռոմանական դպրոցի» հիմնադիրն է): ԵՀՊ‑ի ժամանակ եղել է Ա. Ֆ. Պետենի կառ‑յան գաղափարների կողմնակից:

ՄՈՌԵՆԻ (Rubus idaeus), **ազնվամորի, արքայամորի**, *վարդազգիների* ընտանիքի ռուբուս ցեղի տերևաթափ կիսաթփեր, թփեր, հազվադեպ՝ բազմամյա խոտաբույսեր: Հայտնի է մոտ 120 տեսակ, ՀՀ‑ում՝ 7 (քարոտ, ազնվամորի ևն)՝ Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի և այլ մարզերում, Երևանի շրջակայքում: Պտուղը բազմակորիզ հատապտուղ է: Դեղաբույս է. պտուղներն օգտագործում են որպես քրտնաբեր, ախորժաբեր միջոց՝ նյութափոխանակության խանգարման, ստամոքսաղիք. հիվանդությունների ժամանակ, տերևները՝ որպես հակաբորբոք. միջոց:

ՄՈՍԱՆԴԵՐ (Mosander) Կառլ Գուստավ (1797–1858), շվեդ քիմիկոս: Հայտնագործել է *լանթան* (1839), *տերբիում* և *էրբիում* (1843) հազվագյուտ տարրերը:

ՄՈՍԻՆ Սերգեյ Իվանովիչ (1849–1902), հրաձգ. զենքի ռուս կոնստրուկտոր, զենմայոր (1900): 1890‑ին ստեղծել է 7,62 *մմ*‑անոց, պահեստատուփային 5‑ալիքգ «եռագիծ» հրացանը:

ՄՈՍԻՆՆԵՐ, գուր խմբի ժողդ Բուրկինա Ֆասոյում (7,8 մլն, 2010): Ապրում են նաև Կոտ դ'Իվուարում (2,5 մլն), Գանայում (350 հզ.), Նիգերում (140 հզ.) ևն: Լեզուն՝ մորե: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են, կան քրիստոնյաներ և ավանդ. հավատալիքների հետևորդներ:

ՄՈՍԿԱԼԵՆԿՈ Կիրիլ Սեմյոնովիչ (1902–1985), խորհրդ. զորապետ: ԽՍՀՄ մարշալ (1955): ԽՄ հերոս (1943, 1978): ՀՄՊ‑ի ժամանակ գլխավորել է բանակներ: 1953–60‑ին՝ Մոսկվայի ՋՕ‑ի հրամ.: 1960–62‑ին՝ Ռազմավար. նշանակության հրթիռ. զորքերի գլխ. հրամ., 1962–83‑ին՝ ԽՍՀՄ ՊՆ գլխ. տեսուչ՝ պաշտպ‑յան նախարարի տեղակալ: ՀՍՍՀ հերոս (1969):

«ՄՈՍԿՈՎՍԿԻ ՎԵՍՏՆԻԿ» («Московский вестник» – «Մոսկվայի լրատու»), գր. կիսամյա հանդես (1827–30, Մոսկվա): Դ. Վ. Վենևիտինովի խմբակի հրտ‑յուն (Ա. Ս. *Պուշկինի* մասնակցությամբ):

ՄՈՍԿՎԱ, գետ ՌԴ եվրոպ. մասում, Օկայի ձախ վտակը: Երկ.՝ 473 *կմ*, ավազանը՝ 17,6 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 65,7 *մ*^{3}/*վ*: Օգտագործվում է ջրամատակարարման և նավարկության համար: Ջրանցքով միացած է Վոլգային:

ՄՈՍԿՎԱ, Ռուսաստանի մայրաքաղաքը և Կենտր. դաշն. օկրուգի կենտրոնը: Դաշն. նշանակության քաղաք՝ 1993‑ից: Բն.՝ 12,380 մլն (2017): Երկրի խոշորագույն քաղ., տնտ., գիտակրթ. կենտրոնն է, կարևորագույն տրանսպորտ. հանգույց: Ունի մետրոպոլիտեն, միջազգ. օդանավակայաններ: Կան մեքենաշին. (էլեկտրատեխ., ավտոմեքենաշին., սարքաշին. ևն), մետաղաձուլ., քիմ., սննդի արդ‑յան և այլ ձեռն‑ներ: Գործում են 276 բուհ, բազմաթիվ ԳՀ կենտրոններ, թատրոններ (60‑ից ավելի) և թանգարաններ: Առաջին անգամ հիշատակվում է 1147‑ին: XIII դ‑ից Մոսկվայի իշխանության կենտրոնն էր: 1478‑ից՝ Ռուս. պետության, 1728–32‑ին՝ Ռուս. կայսրության մայրաքաղաքը: 1918‑ից եղել է Խորհրդ. Ռուսաստանի, 1922‑ից՝ միաժամանակ նաև ԽՍՀՄ‑ի մայրաքաղաքը: 1991‑ից ՌԴ մայրաքաղաքն է:

Մ. Պետերբուրգի հետ միասին տնտ‑կանորեն եղել է ռուսահայ մշակույթի կարևոր կենտրոն. այնտեղ հիմնադրվել ու լայն գործունեություն են ծավալել հայ հաս., քաղ., կրթամշակութ., հրտ., գիտ. և բազմաթիվ այլ հաստատություններ:

Մ‑ում հայերի բնակության մասին առաջին տեղեկությունները վերաբերում են XIV դ‑ի վերջին: XIV–XVI դդ‑ում Մ‑ում հայերն ապրել են Կիտայգորոդի շրջանում, որտեղ ունեցել են խանութների շարք, Հայկ. առևտր. տուն: XVI դ‑ում կառուցվել է առաջին հայկ. եկեղեցին, XVIII դ‑ի կեսին՝ Սբ Աստվածածին, 1779‑ին՝ Սբ Խաչ եկեղեցիները:

XVIII դ‑ի 2‑րդ կեսին և XIX դ‑ի 1‑ին կեսին ծավալված լուսավոր. շարժմանը մեծապես նպաստել է 1815‑ին բացված *Լազարյան ճեմարանը*: Մ‑ում գիտ., գր. գործունեություն են ծավալել Միքայել Նալբանդյանը, Մկրտիչ Էմինը, Գրիգոր Խալաթյանը, Ստեփանոս Նազարյանը, Խաչատուր Քուչուկ‑Հովհաննիսյանը, Լևոն Սներյանը, Սմբատ Շահազիզը, Գևորգ Քանանյանը և ուր.:

XIX դ‑ում Մ. Ռուսաստանում հայկ. մամուլի և գրահրտչ‑յան հիմն. կենտրոն էր (տես *Մոսկվայի հայկական տպագրություն*): XIX դ‑ի կեսին Լազարյան ճեմարանի ուսանողների ուժերով կազմակերպվել է առաջին հայկ. թատեր. խումբը, որը հետագա տասնամյակների ընթացքում հայ. ներկայացումներ է տվել: Գործել են բազմաթիվ հայկ. հաս. (ուսանող., կրթ., բարեգործ. ևն) ընկ‑ներ, մշակութ. միություններ (տես *Մոսկվայի հայ երաժշտական կոլեկտիվ, Մոսկվայի հայ իմպերգային ընկերություն, Մոսկայի հայ մշակույթի տուն, Մոսկվայի հայկական թատրոն*), քաղ. կուս‑յուններ, կազմ‑յուններ:

1966-ին Մ. դարձել է ՀԱԵ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի նորաստեղծ թեմի կենտրոնը: 2013-ին Մ-ում օծվել է առաջնորդանիստ Սբ Պայծառակերպություն եկեղեցին:

1980-ական թթ-ի վերջ–1990-ական թթ-ի սկզբին՝ ԽՍՀՄ փլուզումից հետո տարբեր տարածաշրջաններում բռնկված ազգամիջյան ընդհարումների և ստեղծված տնտ. ծանր պայմանների հետևանքով Մ. են եկել հայեր Ադրբեջանից, Աբխազիայից, Միջին Ասիայից, նաև Հայաստանից: Պաշտոն. տվյալներով Մ-ում բնակվում է 103 հզ. հայ (2010), ոչ պաշտոն. տվյալներով՝ 500–600 հզ.: 1993-ին հոկտ-ին բացվել է հայկ. դպրոց, կան նաև կիրակնօրյա դպրոցներ: 2000-ին Մ-ում հիմնադրվել է ՌՀՄ, 2003-ին՝ «Համաշխարհային հայկական կոնգրես» կազմ-յունները (նախագահ՝ Արա Աբրահամյան):

«ՄՈՍԿՎԱ» ԿԻՆՈԹԱՏՐՈՆ Երևանի, բացվել է 1937-ին (ճարտ-ներ՝ Տիրան *Երկանյան*, Գևորգ *Քոչար*): Ունի 2 դահլիճ: 1968-ին բացվել է ամառ. դահլիճը (ճարտ-ներ՝ Սպարտակ *Կնտեղցյան*, Թելման *Գևորգյան*):

ՄՈՍԿՎԱՅԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ Մաքսիմ Գորկու անվան (ՄԳԱԹ): Հիմնադրվել է 1898-ին՝ Կ. Ս. *Ստանիսլավսկու* և Վ. Ի. *Նեմիրովիչ-Դանչենկոյի* նախաձեռնությամբ, մինչև 1901-ը՝ Մոսկվայի գեղ. (1919-ից՝ ակադեմ., 1932-ից՝ Գորկու անվ.): Թատրոնի ստեղծագործ. ուղղվածությունը կանխորոշվել է Ա. Պ. Չեխովի և Մ. Գորկու նորարար. պիեսների բեմադրություններով: 1970–2000-ին՝ գլխ. ռեժ. Օ. Ն. *Եֆրեմով*: 1987-ին թատերախումբը բաժանվել է 2 խմբի՝ 2000-ից՝ Օ. Պ. *Տաբակովի* (1989-ից՝ ՄԳԱԹ Ա. Պ. Չեխովի անվ.) և Տ. Վ. *Դորոնինայի* (ՄԳԱԹ Մ. Գորկու անվ.) ղեկավարությամբ: Հայ դերասաններից այստեղ են աշխատել Գ. Բուրջալովը, Ս. Խաչատրյանը, Ն. Ալանովը, Ա. Օհանյանը, Ա. Շահխաթունին, կատարելագործվել՝ Օ. Սևումյանը, Ժասմենը, Հ. Զարիֆյանը: 1904–05-ին Վ. Սուրենյանցը ձևավորել է ներկայացումներ:

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎԳԵՆԻ ՎԱԽԹԱՆԳՈՎԻ ԱՆՎԱՆ ԹԱՏՐՈՆ, հիմնադրվել է 1920-ին՝ որպես ՄԳԱԹ-ի 3-րդ ստուդիա, 1913-ին՝ Ե. Վախթանգովի կազմակերպած Ուսանող. դրամատիկ. ստուդիայի հիմքի վրա: 1926-ից՝ Ե. Վախթանգովի անվ., 1956-ից՝ ակադ.: 1939–68-ին գլխ. ռեժ.՝ Ռուբեն *Սիմոնով*, 1968–87-ին՝ Եվգենի *Սիմոնով*, 1987–2007-ին գեղ. ղեկ.՝ Մ. Ա. Ուլյանով, 2007-ից՝ Ռ. Տումինաս:

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎ, հիմնադրվել է 1922-ին Մոսկվայի հայ մշակույթի տանը: Հիմնադիրներ՝ Գ. Բուդաղյան, Մ. Սազմանյան, Լ. Խաչատրյան, Գեղարիկ (Գ. Տեր-Գաբրիելյան), Ա. Տոնիկյան: Մինչև 1925-ը՝ Մոսկվայի հայ երաժշտ. խմբակցություն: Տպագրել և տարածել է հայ երաժիշտների գործերից, կազմակերպել հայկ. երաժշտության (Կոմիտասի, Ա. Սպենդիարյանի, Ս. Բարխուդարյանի և ուր.) համերգներ: Կազմում՝ Մ. Միսկարյան, Գ. Մելքումյան, Ն. Չեմբերջի, Ա. Շահվերդյան, Գ. Խուրով, Մ. Աղայան և ուր.: Հրատարակել է «Կյանք և երաժշտություն» հանդեսը (մեկ համար՝ 1924-ին): Գործել է շուրջ 10 տարի:

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԽՄԲԵՐԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, հիմնադրել է Եղիշե *Բաղդասարյանը*՝ 1909-ին Մոսկվայում ստեղծված և 1910-ից հայկ. եկեղեցու հովանավորությամբ գործող հայ ինքնագործ խմբերի հիման վրա: Երկացանկում՝ հոգևոր և աշխարհիկ (Ք. Կարա-Մուրզա, Մ. Եկմալյան, Կոմիտաս, Ա. Մայիլյան, Ե. Բաղդասարյան) երգեր:

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ, հիմնադրվել է 1921-ին՝ 1919-ին Հայկ. ինստ-ի վերածված *Լազարյան ճեմարանի* շենքում: 1999-ին տրվել է ՀՀ-ին: 1987-ից (1952–86-ին չի գործել) վերսկսել է գործունեությունը «Հյուսիսային ծիածան» մշակութ. կենտրոն անվամբ՝ հիմնովին վերակառուցված նույն շենքում: Կենտրոնն ունի գրադարան, դահլիճ, թանգարան, հայկ. թատերախումբ, հայ-ի ուսուցման դասընթացներ:

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ, գործել է 1922–30-ին: Խաղացանկում՝ դրամաներ, կատակերգություններ, երաժշտ. ներկայացումներ (Ա. Տիգրանյանի «Անուշ», Ա. Աթայանի «Մասունցի Դավիթ» ևն): Թատերախմբում էին (ղեկ.՝ Կ. Դեյք) Հ. Թրագոշյանը, Ռ. Արմենյանը, Ա. Մասչյանը, Պ. Գարագաշյանը, Ա. և Մ. Սեճոռյանները և ուր.:

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՏ, հիմնադրել են (1914-ի հոկտ. 26) մոսկվաբնակ հայերը: Անդամակցել են Ստեփան *Սամիկոնյանը* (նախագահ), Կարապետ *Կուսիկյանը*, Ալեքսանդր *Ծատուրյանը*, Ալեքսեյ *Ջիվելեգովը* և ուր.: Նպատակը Թուրքիայի դեմ պատերազմում Ռուսաստանին աջակցելն էր և պատերազմից տուժած ռուս. բանակի զինվորների, հայ կամավորների ու գաղթականների օգնություն կազմակերպելը: 1915-ի հուլիսին ընդգրկվել է Ռուսաստանի Կարմիր խաչի ընկ-յան կազմում: 1916-ին հիմնադրել է «*Արմյանսկի վեստնիկ*» շաբաթաթերթը: Գործել է մինչև 1918-ի մարտը:

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, հայ. 1-ին գիրքը Մոսկվայում տպագրվել է 1819-ին՝ ֆրանսիացի տպագրիչ Օ. Սեմենի տպարանում: 1849–75-ին Վ. Գոթիեն տնօրինել է տպարանը և հրատարակել 19 անուն գիրք: Մոսկվայում հայկ. 1-ին տպարանը հիմնադրել են Հովհաննես և Խաչատուր Հովակիմյանները 1829-ին՝ Լազարյան ճեմարանին կից. գործել է մինչև 1866-ը (տես *Լազարյան ճեմարանի տպարան*):

XIX դ-ի վերջին և XX դ-ի 1-ին տասնամյակում Մոսկվայի հայկ. ամենախոշոր տպարանը Մկրտիչ *Բարխուդարյանինն* էր: Գործել է 1890–1915-ին, տպագրել ավելի քան 130 անուն գիրք: 1900-ից հետո տպարանը տնօրինել է կինը՝ Քրիստինե Բարխուդարյանը: Մոսկվայում հայ. գրքեր են տպագրվել Է. Բարֆինեհեթի (1858–59, 7 անուն), Կայսեր. համալսարանի (1861–70, 11 անուն), Զ. Սներյանի (1874–79, 5 անուն), Օ. Հերբեկի (1883–1900, 33 անուն), Վ. Գատցուկի (1898–1903, 10 անուն), Ե. Ավետիքյանի (1906–17, 22 անուն), Կ. Մուրադյանցի (1917–19, 16 անուն), Հայկ. գործերի կոմիսարիատի (1917–21, շուրջ 55 անուն) և այլ տպարաններում:

Մոսկվայում հայ պարբ. մամուլի առաջնեկներն են «Հիւսիսափայլ» (1858–64), «Ճռաքաղ» (1858–62) ամսագրերը, «Համբաւաբեր Ռուսիոյ» (1861–64) թերթը, «Փարոս» (1872–76) բանասիր. տարեգիրքը: XIX դ-ի վերջ–XX դ-ի սկզբին լույս են տեսել «Հանդէս գրականական եւ պատմական» (1888–96), «Էմմինեան ազգագրական ժողովածու» (1901–13) հանդեսները, «Գարուն» (1910–12) գր-գեղ. տարեգիրքը, «Արմյանսկի վեստնիկ» (1916–18) հասքաղ. հանդեսը ևն: Ներկայում լույս են տեսնում «Արմինիըն Թայմս» (1994-ից), «Նոյև Կովչեգ» (1997-ից) ամսաթերթերը, «Վեստնիկ» (2002-ից, ՌՀՄ տեղեկագիր), «Հայաստանյայց եկեղեցի» (2007-ից) և այլ պարբ-ներ:

ՄՈՍԿՎԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ԱԿԱԴԵՄԻԱ, ՌՈՒԽ խոշորագույն ուս. հաստատություն Սերգիև Պասադ ք-ում (Մոսկվայի մարզ): Հիմնադրվել է 1687-ին՝ որպես *Սլավոնա-հունա-լատինական ակադեմիա*, 1814-ին վերակազմավորվել է և Մոսկվայից տեղափոխվել Սբ Երրորդություն-Սերգիևյան մայրավանք: 1919–46-ին չի գործել:

ՄՈՍԿՎԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1941–42, ԵՀՊ-ի ժամանակ խորհրդ. զորքերի ռազմ. գործողություն՝ Մոսկվան գերմանաֆաշիստ. զորքերի հարձակումից պաշտպանելու և նրանց հետ մղելու նպատակով: Բաժանվում է 2 շրջանի՝ պաշտպ. (1941-ի սեպտ. 30–դեկտ. 4) և հարձակող. (1941-ի դեկտ. 5–1942-ի ապրիլի 20): 1942-ի հունվ-ի սկզբին սկսվել է ընդհ. հարձակումը, որի շնորհիվ գերմանացիները 100–250 *կմ* հետ են մղվել Մոսկվայից: Մ. ճ-ում գերմ. զորքերի պարտությունն առաջինն էր ԵՀՊ-ում:

Մ. ճ-ին մասնակցել են մեծ թվով հայեր. աչքի են ընկել մայոր Ն. Բալոյանը, գնդներ Հ. Մարտիրոսյանը, Ս. Գինոսյանը, Հ. Ղազարյանը, լեյտ. Մ. Պարսեղովը, գնդմայոր Ի. Վեքիլյանը և ուր.:

ՄՈՍԿՎԱՅԻ ՄԱՐԶ, ՌԴ, Կենտր. դաշն. օկրուգ: Տարածքը՝ 45,8 հզ. *կմ*^{2}, բն.՝ 6,7 մլն (2009, առանց Մոսկվայի): Վարչ. կենտրոնը՝ *Մոսկվա*: Կազմավորվել է 1926-ին: Զբաղեցնում է Վոլգա և Օկա գետերի միջագետքը: Ծածկված է հիմնականում խառնանտառներով: Արդ-յան առաջատար ճյուղերն են մեքենաշինությունը, սննդի, քիմ., շինանյութերի արդ-յունը:

ՄՈՍԿՎԱՅԻ ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, պետություն Հս-արլ. Ռուսիայում: Մայրաքաղաքը՝ Սոսկվա: Բաժանվել է Վլադիմիրի մեծ իշխանությունից 1260–1270-ական թթ-ին՝ իշխան Դանիլ Ալեքսանդրովիչի օրոք: Մոնղոլ-թաթարների դեմ հաղթանակից հետո (տես *Կուլիկովոյի ճակատամարտ 1380*) Մոսկվայի իշխան Դմիտրի Դոնսկոյն ավելի է ամրապնդել Մոսկվայի գերիշխող դիրքը: Մ. մ. ի. դարձել է Ռուս. միասն. պետության հիմքը:

ՄՈՍԿՎԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ (1994-ից՝ պետ. համալսարան), ստեղծվել է 1944-ին՝ ՄՊՀ միջազգ. հարաբերությունների ֆակ-ի հիման վրա: 1954-ին նրան է միացել Մոսկվայի արևելագիտյան ինստ-ը (*Լազարյան ճեմարան*, հիմն.՝ 1815), 1958-ին՝ Ներքին առևտրի ինստ-ը (հիմն.՝ 1934): 2015-ին ուներ շուրջ 5 հզ. ուսանող: 1960–90-ական թթ-ին հիմնականում այս ինստ-ում են պատրաստվել հայ դիվանագետները:

ՄՈՍԿՎԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 1921, **խորհրդա-թուրքական պայմանագիր բարեկամության և եղբայրության**: Պայմանագրի ստորագրելուն նախորդել է ռուս-թուրք. 2 խորհրդաժողով (Մոսկվա, 1920-ի հուլիս–օգոստ., 1921-ի փետր.–

մարտ), որոնց նպատակը Խորհրդ. Ռուսաստանի և քեմալ. Թուրքիայի միջև հարաբերությունները կարգավորելն էր: Մ. պ. (16 հոդված, 3 հավելված) ստորագրվել է մարտի 16-ին (հայկ. կողմը չի մասնակցել): Հայաստանից Թուրքիային են անցել Կարսի մարզը և Սուրմալու գավ-ը (որը երբևէ չէր եղել Թուրքիայի կազմում): Որպես ինքնավար տարածք՝ Խորհրդ. Ադրբեջանի պետ. գերիշխանությանն են անցել Նախիջևանի, Շարուր-Դարալագյազի գավ-ների մեծ մասը և Երևանի գավ-ի մի մասը՝ այդ գերիշխանությունը երրորդ պետությանը չզիջելու պայմանով (հոդված 3): Տես նաև ***Կարսի պայմանագիր 1921***:

ՄՈՍԿՎԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ Մ. Վ. Լոմոնոսովի անվան (1940–ից, ՄՊՀ), ՌԴ խոշորագույն բուհը, համաշխ. գիտ. կենտրոններից: 1992-ից ստացել է Ռուսաստանի պետ. ինքնավար բուհի, 2009-ից՝ Ազգ. հետազոտ. համալսարանի կարգավիճակ: Հիմնադրվել է 1755-ին՝ Մ. Վ. ***Լոմոնոսովի***՝ նախաձեռնությամբ՝ փիլ., իրավաբ., բժշկ. ֆակ-ներով: Ներկայում մասնագետներ է պատրաստում գրեթե բոլոր բնագավառների համար: Ներառում է նաև Ասիայի և Աֆրիկայի երկրների ինստ-ը, Հումանիտար և հաս. գիտ-յունների դասախոսների որակավորման բարձրացման ինստ-ը, ֆրանս. քոլեջը և այլ հաստատություններ: Ունի շուրջ 380 ամբիոն, 15 ԳՀԻ (մեխանիկայի, Դ. Վ. Սկոբելցինի անվ. միջուկային ֆիզիկայի, Պ. Կ. Շտեռնբերգի անվ. աստղագիտ-յան, Դ. Ն. Անուչինի անվ. մարդաբանության ևն), հաշվող. կենտրոն, 4 աստղադիտարան, բուսաբ. այգի, 4 թանգարան, գրադարան (1756-ից), հրտչ-յուն (1927-ից): 2015-ին ուներ ավելի քան 40 հզ. ուսանող: 2015-ից ՀՀ-ում գործում է ՄՊՀ-ի մասնաճյուղ:

ՄՈՍԿՎԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ Ն. Է. Բաումանի անվան (ՄՊՏՀ), ՌԴ մեքենա- և սարքաշինության խոշորագույն բուհ և հետազոտ. կենտրոն: 2009-ից՝ Ազգ. հետազոտ. համալսարան: Հիմնադրվել է 1826-ին՝ Մոսկվայի դաստիարակչ. տանը կից հիմնադրված արհեստագործ. ուսումնարանի հիմքի վրա: 1830–87-ին՝ Մոսկվայի արհեստագիտ. ուս. հաստատություն, 1868-ից՝ Կայսեր. տեխ. ուսումնարան, 1917-ից՝ Մոսկվայի բարձրագույն տեխ. ուսումնարան. վերջինիս հիմքի վրա ստեղծվել են մի շարք բուհեր և ԳՀՀ-ներ: 1989-ից՝ ՄՊՏՀ: 2015-ին ուներ ավելի քան 18 հզ. ուսանող:

ՄՈՍԿՎԱՅԻ ՏՊԱԳՐԱՏՈՒՆ, ռուս. 1-ին տպարանը: Հիմնադրվել է 1563-ին: Այստեղ են աշխատել ռուս առաջին տպագրիչներ ***Իվան Ֆեոդորովն*** ու ***Պյոտր Մստիսլավեցը***: XVII դ-ում Մ. տ-ում տպագրվել է շուրջ 500 անուն գիրք: 1721-ին անցել է Սինոդի ենթակայությանը և վերանվանվել Մոսկվայի սինոդի տպագրատան: Գործել է մինչև 1917-ը:

ՄՈՍԿՎԻՆ Անդրեյ Նիկոլաևիչ (1901–1961), ռուս կինոօպերատոր: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1935): Ռուս. օպերատոր. դպրոցի հիմնադիրներից: Նկարահանել է «Մաքսիմի պատանեկությունը» (1935), «Մաքսիմի վերադարձը» (1937), «Վիբորգյան կողմ» (1939), «Իվան Ահեղ» (1945, 1958, Է. Կ. ***Տիսեի*** հետ), «Բոռը» (1955), «Շնիկով տիկինը» (1960, Դ. Դ. ***Մեսխիևի*** հետ) ևն: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1948):

ՄՈՍԿՎԻՆ Իվան Միխայլովիչ (1874–1946), ռուս դերասան: ՌԽՖՍՀ (1926), ԽՍՀՄ (1936) ժող. արտիստ: Մ. Մ. ***Տարխանովի*** եղբայրը: 1898-ից՝ ՄԳԹ-ի դերասան (1943-ից՝ տնօրեն): Վերամարմնավորման արվ-ի վարպետ (Լուկա՝ Մ. Գորկու «Հատակում», Ֆեոդոր՝ Ա. Կ. Տոլստոյի «Ֆեոդոր Իվանովիչ ցարը», Պրոտասով՝ Լ. Ն. Տոլստոյի «Կենդանի դիակ», Իվան Գոռոլով՝ Ա. Ե. Կոռնեյչուկի «Ռազմաճակատ», ևն): Նկարահանվել է կինոյում: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943, 1946):

ՄՈՍՈՅԱՆ Կարեն Սարգսի (ծ. 1940), ռադիոֆիզիկոս: Տեխ. գիտ. դ-ր (1983), պրոֆ. (1985): 1980-ից՝ «Կոմետա», 1995-ից՝ «Կոմետա-1» գիտաարտադր. ինստ-ի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են ռադիոֆիզ. հեռաչափ մեթոդներով Երկրի բնական պաշարների հայտնաբերման խնդիրներին, ԳՀՀ գերզգայուն մուտք. սարքերի հետազոտմանը և մշակմանը, ուսումնասիրել է փոված մակերևույթների սեփ., նաև նրանցից անդրադարձած ճառագայթների տեղեկատվ. հարաչափերը:

ՄՈՍՏՈՎՈՅ Վլադիմիր Իոսիֆովիչ (1919–1996), ռուս ֆիզիկոս: ՌԴԱ թղթ. անդամ (1984): ԽՄ հերոս (1944): Ստեղծել է (աշխատակիցների հետ) նեյտրոն. սպեկտրադրման մեթոդ՝ ըստ նեյտրոնի թռիչքի ժամանակի, հայտնագործել է նեյտրոն. ռեզոնանսներ և որոշել դրանց հարաչափերը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1949, 1953, 1973):

ՄՈՎՍԵՍ Ա. ՄԱՆԱԶԿԵՐՏՑԻ (ծ. թ. անհտ–461), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 456-ից՝ ***Աղբիանոսյանների*** տոհմից: Իր գործունեությամբ հակվել է դեպի պարսկ. կողմնորոշում ունեցող նախարարները:

ՄՈՎՍԵՍ ԱՐԾԿԵՑԻ, XV դ-ի 2-րդ կեսի գրիչ, մատենագիր: Գործել է Արծկե (Բզնունյաց գվռ), Ամիդ (Դիարբեքիր) ք-ներում: Մ. Ա-ու ընդօրինակած ամենահին մատյանը թվագրված է 1472-ով, վերջինը՝ 1493-ով: Նրա թողած հիշատակարաններում հարուստ տեղեկություններ կան կարա-կոյունլու, ակ-կոյունլու ցեղախմբերի և Սեֆյան տիրակալների պատերազմների մասին: Արժեքավոր է Մ. Ա-ու չափածո տարեգրությունը, որը վերաբերում է 1467–73-ի դեպքերին:

ՄՈՎՍԵՍ Բ ԵԼԻՎԱՐԴԵՑԻ (ծ. թ. անհտ–604), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 574-ից: Նրա օրոք գործածության մեջ է դրվել Հայոց տոմարը (ընդունվել էր 551-ին): Բյուզանդիայի կայսր Մորիկը (Մավրիկիոս) Մ. Բ Ե-ուց պահանջել է քաղկեդոնականության ընդունում: Մերժվելով՝ կայսրը Հայաստանի բյուզ. մասում ստեղծել է հակաթոռ կաթողիկոսություն (կաթողիկոս՝ Հովի. Բագարանացի), որի աթոռանիստն էր Կոտայք գվռ-ի Ավան գք-ը (այժմ՝ Երևանի հս-արլ-ում):

ՄՈՎՍԵՍ Գ ՏԱԹԵՎԱՑԻ, Սուրբ Մովսես Գ Տաթևացի (մոտ 1578–1632), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1629-ից: 1627-ին նորոգել է Սբ Էջմիածնի վանքը, Վեհարանը, օժանդակ կառույցները և պարիսպները: Պարսից շահից ստացել է Սբ Էջմիածնի պարտքի զիջման հրովարտակ: Երևանում հիմնադրել է սպիտակ մոմի գործարան:

ՄՈՎՍԵՍ ԴԱՍԽՈՒՐԱՆՑԻ, X դ-ի մատենագիր: Շարունակել ու ամբողջացրել է ***Մովսես Կաղանկատվացու*** «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը (3-րդ մաս, VII դ-ի կես–X դ-ի կես): Շարադրել է խիստ հակիրճ՝ ժամանակագր. կարգով:

ՄՈՎՍԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ (1250-ական թթ.–1323), մատենագիր, մանկավարժ: 1290-ից Սկևռայի դպրոցում աշակերտել է ***Գրիգոր Սկևռացուն***: Կիլիկիայում ընդօրինակել է Աստվածաշունչ (Մոնղ., ձեռ. № 177): 1307-ից Երզնկայի Սբ Գրիգոր Լուսավորիչ վանքում զբաղվել է ուսուցչությամբ և գրչությամբ: Գրել է մեկնող., դավան., խրատական-կանոնական երկեր, կազմել է «Ոսկեփորիկ» ժող-ը, որ ներառում է 200-ից ավելի խրատներ, վարքեր, դավան. այլընտրական նյութեր: Հիշարժան է ուսուցչի՝ Գևորգ Սկևռացու մահվան առիթով Մ. Ե-ու գրած «Ողբը» (1301, հրտ.՝ 1901, «Հայապատում»):

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, Պատմահայր, Քերթողահայր (մոտ 410–մոտ 490), միջնադար. պատմագրության մեծագույն ներկայացուցիչ, քերական, մեկնիչ, բանաստեղծ, թարգմանիչ, իմաստասեր: ***Մամբրե Վերծանողի*** եղբայրը: Աշակերտել է ***Մեսրոպ Մաշտոցին*** և ***Սահակ Ա Պարթևին***: Հմտացել է քերթող. արվ-ի, ճարտասանության, քերականագիտ-յան մեջ, կատարելագործել հուն-ի իմացությունը: Եղել է Բագրեւանդի թեմակալ առաջնորդ: Մ. Խ-ու գլուխգործոցը «Պատմութիւն Հայոց»-ն է՝ գրված իշխան Սահակ Բագրատունու պատվերով (մոտ 480-ին): Այն Հայոց պատմության առաջին ամբողջ. շարադրանքն է՝ բաղկացած 3 գրքից («Հայոց մեծերի ծննդաբանությունը», «Միջին պատմություն մեր նախնիների», «Մեր հայրենիքի պատմության ավարտը») և «Ողբ»-ից: Մ. Խ. օգտագործել է տարբ-ույթ օտար, հայկ. (այդ թվում՝ նախամաշտոցյան) մատենագր., վավերագր., բանավոր, նյութ. և այլ սկզբնաղբյուրներ: Երկը համաշխ. պատմագիտ. մտքի նշանավոր կոթողներից է: 1-ին անգամ հրատարակվել է 1695-ին Ամստերդամում:

ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻ, VII դ-ի պատմիչ: Նրա անունով մեզ է հասել 3 մասից (գիրք) բաղկացած «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը: Առաջին 2 գրքերը («աշխարհի ստեղծումից» մինչև VII դ-ի 1-ին կես) գրել է Մ. Կ., 3-րդ գրքի հեղինակը ***Մովսես Դասխուրանցին*** է: Մ. Կ-ու շնորհիվ է մեզ հասել նրա ժամանակից բանաստեղծ ***Դավթակ Քերթողի*** «Ողբք...» բարձրարվ. քերթվածքը:

ՄՈՎՍԵՍ ԿԱՐՆԵՑԻ, Արզրումցի, XVII–XVIII դդ-ի տաղասաց, դպիր: Մեզ է հասել հոգևոր բնույթի 14 տաղ, ունի նաև բնության, գարնան, սիրո թեմաներով այլաբան. տաղեր: «Ողբ ի վերայ ազգին մերոյ...» տաղում պատկերել է հայ ազգի վիճակն օտար լծի տակ, «Տաղ ազնիւ... դարիպութեան» տաղում խոսում է իր հոգևոր պանդխտության մասին: Մ. Կ-ու տաղերը պահվում են Վիեննայի և Երևանի մատեն-ներում:

ՄՈՎՍԵՍ ՔԵՐԹՈՂ, V–VI դդ-ի մեկնիչ: Նույնացվել է ***Մովսես Խորենացու*** հետ: Ըստ Նիկողայոս ***Ադոնցի***՝ եղել է Ստեփանոս Սյունեցու ուսուցիչը, որին էլ վերագրել են մի քանի հոգևոր երգեր ու թարգմ-յուններ: Մեկնել է Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ» երկը: Հնչյունաբանության մեջ տարբերակել է գիրը և տառը, ճշգրտել է հայ-ի ձայնավորների և բաղաձայնների տարբերությունը, անդրադարձել հոլովումներին, հոլովներին, քերական. կարգին:

ՄՈՎՍԵՍՅԱՆ Գեորգի Վիկտորի (1945–2011), կոմպոզիտոր, երգիչ: ՌԴ մշակույթի

վաստ. գործիչ (1995)։ ՌԴ ժող. արտիստ (2001)։ 1969–ից՝ Մոսկոնցերտի մենակատար և կոնցերտմայստեր։ Գրել է երգեր Ռ. Ի. Ռոժդեստվենսկու և ուր. խոսքերով («Ճանապարհներ», «Կեչի», «Միրո հրաժեշտ», «Դա ասում ենք մենք» ևն), նաև կինոերաժշտություն («Տղամարդիկ և մնացած բոլորը», 1986, «Չեմ ուզում ամուսնանալ», 1993)։ Իր երգերի լավագույն կատարողներից էր։

ՀԼԿԵՄ մրց. (1983), ՌԴ «Պատվո շքանշան» (2006)։

ՄՈՎՍԵՍՅԱՆ Մելիստ Եղիշեի (1929–2010), ֆիզիկոս։ Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1973), պրոֆ. (1983)։ ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1977–ից)։ Եղիշե ***Մովսեսյանի*** որդին։ Ուսումնասիրել է բյուրեղների և հեղուկների յումինեսցենտման երևույթը, գրգռման էներգիայի միջմոլ. և ներմոլ. փոխանցման հարցերը։ Հետազոտել է ստիպող. համակցված ցրումը՝ ալկալ. մետաղների ատոմների էլեկտրոն. մակարդակների միջև, ինչպես նաև եռաֆոտոն ցրումը և այլ շարժընթացներ։

ՄՈՎՍԵՍՅԱՆ Ռուբեն Ռուդոլֆի (ծ. 1968), մանկ. սրտավիրաբույժ։ Բժշկ. գիտ. դ–ր (2003), պրոֆ. (2010, ՌԳԱ պրոֆ.՝ 2016–ից)։ ՌԳԱ թղթ. անդամ (2016)։ Ռուդոլֆ ***Մովսեսյանի*** որդին։ Առաջինն է ՌԴ–ում իրականացրել սրտի բարդ արատների դեպքում ջերմատեսող. հսկողությամբ, ձեռքբերովի արատների շտկողական վիրահատություններ, նախասիրտփորոքային փականների պրոթեզավորում ևն։

Ա. Ն. Բակուլևի անվ. (2012), Ս. Պետերբուրգի կառ–յան «Տարվա լավագույն բժիշկ» (2014) մրց–ներ։

ՄՈՎՍԵՍՅԱՆ Ռուդոլֆ Արծրունի (ծ. 1936), վիրաբույժ։ Բժշկ. գիտ. դ–ր (1990), պրոֆ. (1994)։ ՌԴ վաստ. բժիշկ (1995)։ ՌԲԳԱ սիրտանոթ. վիրաբուժության ինստ–ի փոխտնօրեն (Մոսկվա)։ Աշխ–ները վերաբերում են սրտի փականների պրոթեզավորմանը, սրտի արհեստ. փականների վրա թրոմբի առաջացման բացահայտմանն ու համապատասխան հակամակարդիչներով բուժմանը, նաև աորտայի անոթալայնանքի (անևրիզմ) վիրաբուժությանը։ Նյու Յորքի ԳԱ, ՌԲՆԳԱ ակադ.։

ԵԲՆԳԱ Նիկոլայ Պիրոգովի, ՌԴ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2–րդ աստիճանի (2006) շքանշաններ։

ՄՈՎՍԵՍՅԱՆ Սերգեյ Հովհաննեսի (ծ. 1928), ճիճվաբան։ Կենսբ. գիտ. դ–ր (1972), պրոֆ. (1989)։ ՀՀ ԳԱԱ ակադ. (1990, թղթ. անդամ՝ 1982–ից)։ ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2013)։ 1976–96–ին՝ ՀՀ ԳԱԱ կենդբ–յան ինստ–ի տնօրեն։ Ուսումնասիրել է երիզորդերի կենսակերպը, առաջարկել կենդբ. նոր համակարգեր, նկարագրել նոր տեսակներ, նաև ԼՂՀ–ի գոտ. կենդանիների մակաբուծ. հիվանդությունները։ Հայաստանի ճիճվաբանների ընկ–յան նախագահ (1976–ից), Ռուսաստանի մակաբուծաբանության հիմնախնդր. գիտ. խորհրդի փոխնախագահ (1998–ից)։

ՌԳԱ Կ. Ի. Սկրյաբինի մրց. (2002) և մեդալ (1974), Ե. Ն. Պավլովսկու (1980), Գ. Մենդելի (1988) մեդալներ։

ՄՈՎՍԵՍՅԱՆ Սուրեն Համբարձումի (1911–1982), երկրաբան։ Երկրբ. գիտ. դ–ր (1969)։ ՀԽՍՀ շինանյութերի արդ–յան նախարար (1945–52), Պետպլանի նախագահ, ՆԽ նախագահի 1–ին տեղակալ (1952–73)։ Աշխ–ները վերաբերում են Հայաստանի և Կովկասի մետաղ. հանքավայրերի երկրբ. ու տնտ. գնահատման հարցերին։

ՄՈՎՍԻՍԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ, Աստծու՝ Մովսես մարգարեին տրված կարգադրությունների ու որոշումների ժող., որոնցով կարգավորել են Իսրայելի ժողդ–ի քաղաքաց. ու ընտանեկան, հող. իրավահարաբերությունները, կրոն. ծիսակատարություններն ու ժամասացությունները։ Մ. օ–ի հիման վրա են կազմել հին և միջնադար. բազմաթիվ երկրների աշխարհիկ ու եկեղեց. օրենսդրությունները։ Որոշակի փոփոխություններով ու լրացումներով, Մ. օ., որպես աղբյուր, օգտագործվել են հայ օրենսդր. հուշարձաններում («Կանոնագիրք հայոց», «Կանոնական օրինադրություն», Մխիթար Գոշի, Սմբատ Սպարապետի դատաստանագրքեր ևն)։

ՄՈՎՍԻՍՅԱՆ Աբգար Խաչատուրի (1905–1967), մանկավարժ, խմբ.։ Մանկավարժ. գիտ. դ–ր (1961), պրոֆ. (1963)։ ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961)։ 1932–34–ին՝ «Կուլտուրական ֆրոնտ» (1997–ից՝ «***Կրթություն***») պարբ–ի խմբ., 1944–46–ին՝ ՀԽՍՀ լուսավորության նախ–յան դպրոցների ԳՀԻ–ի տնօրեն, 1946–48–ին՝ լուսավորության փոխնախարար։ Աշխ–ները վերաբերում են հայ դպրոցի և մանկավարժության պատմությանը։

ՄՈՎՍԻՍՅԱՆ Արտակ Երջանիկի (ծ. 1970), պատմաբան։ Պատմ. գիտ. դ–ր (2015), պրոֆ. (2016)։ Աշխ–ները վերաբերում են Վանի թագավորությանը, Հայաստանի տարածքի 1–ին պետ. կազմավորումներին, հայկ. մեհենագրությանը։

ՄՈՎՍԻՍՅԱՆ Եղիշե Մովսեսի (1899–1973), ագրոքիմիկոս։ Գղտ. գիտ. դ–ր (1951), պրոֆ. (1961)։ ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1966)։ Մելիստ ***Մովսեսյանի*** հայրը։ Աշակել է հողի, բույսի ու պարարտանյութերի ագրոքիմ. բնութագրման և հումուսի որոշման եղանակներ։

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան։

ՄՈՎՍԻՍՅԱՆ Զարեհ Գրիգորի (1900–1977), ռենտգենաբան։ Բժշկ. գիտ. դ–ր (1954), պրոֆ. (1969)։ ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961)։ 1924–ից ՀԽՍՀ մի շարք քաղաքների ու շրջանների բժշկ. հիմնարկներում կազմակերպել է ռենտգենաբանության բաժանմունքներ։ Աշխ–ները վերաբերում են կմախքի ոսկրերի և ոսկրահեղձային ապարատի ախտահարումների, ուռուցքների, տուբերկուլոզի, էխինոկոկոզի, ճառագայթ. հիվանդության ռենտգենախտորոշմանը և ռենտգենաբանության ժամանակակից խնդիրներին։

ՄՈՎՍԻՍՅԱՆ Ժորա Սամբրեի (1926–2007), դերասան։ ԼՂՀ ժող. արտիստ (2004)։ 1950–62–ին՝ ԵՊՀԹ–ի, Գորիսի, 1962–ից՝ Ստեփանակերտի դրամատիկ. թատրոնների դերասան։ Նկարահանվել է կինոյում («Մենավոր ընկուզենին», 1985)։

ՄՈՎՍԻՍՅԱՆ Լավրենտի Ալեքսանդրի (ծ. 1933), մեխանիկոս։ Տեխ. գիտ. դ–ր (1973), պրոֆ. (1981)։ Աշխ–ները վերաբերում են իզոտրոպ և անիզոտրոպ սալերի ու թաղանթների տատանումների և ալիքների տարածման ու մոմենտ. վիճակի, խառը եզրային պայմանների ու հարվածի դեպքում կայունության հարցերին։

ՄՈՎՍԻՍՅԱՆ Լերմոնտ Մուշեղի (1943–1995), ռադիոֆիզիկոս։ Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1992), պրոֆ. (1993)։ Աշխ–ները վերաբերում են էլեկտրադինամիկայի ԳՀՀ–ների ռադիոֆիզիկայի, մասնավորապես՝ էլեկտրոնաճառագայթ. փոխազդեցության հարցերին։

ՄՈՎՍԻՍՅԱՆ Հարություն Գրիգորի (ծ. 1951), դերասան։ ՀՀ վաստ. արտիստ (2004)։ 1973–ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասան։ Նկարահանվել է «Կտոր մը երկինք», «Գիքոր», «Արահետ», «Նախաճաշ երկուսի համար», «Բախում», «Որոգայթ» հեռուստասերիալներում։ ՀԹԳՄ ոսկե մեդալ (2017)։

ՄՈՎՍԻՍՅԱՆ Միքայել Առուստամի (1920–2012), ախտաբան–ֆիզիոլոգ, ուռուցքաիմունաբան։ Բժշկ. գիտ. դ–ր (1966), պրոֆ. (1967)։ Աշխ–ները վերաբերում են կենդանիների օրգան–համակարգերի վրա իոնացնող ճառագայթների և արյունահոսությունների զուգակցված վնասվածքների համատեղ ներգործությանը և դրա հետևանքով առաջացած հիվանդությունների բուժմանը։

ՄՈՎՍԻՍՅԱՆ Յուրի Թադևոսի (1929–1994), տնտեսագետ։ Տնտեսագիտ. դ–ր (1978), պրոֆ. (1981)։ Աշխ–ները վերաբերում են պլանավորման մեջ մաթ. մեթոդների և մոդելների կիրառման, տարածք. ժողտնտ. համակարգերի լավարկման չափանիշների ընտրության խնդիրներին։

ՄՈՎՍԻՍՅԱՆ Յուրի Մովսեսի (ծ. 1949), մաթեմատիկոս։ Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1992), պրոֆ. (1992)։ Աշխ–ները վերաբերում են հանրահաշիվներում գերնույնությունների և գերբազմաձևությունների հարցերին։

ՄՈՎՍԻՍՅԱՆ Ռաֆայել Հակոբի (1925–2002), ճարտարագիտ. գեոդեզիայի բնագավառի գիտնական։ Տեխ. գիտ. դ–ր (1977), պրոֆ. (1978)։ ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1986–ից)։ ՀՀ վաստ. շինարար (1971)։ Աշխ–ները վերաբերում են երկրաշարժերի կանխատեսման հարցերին։ Ստեղծել է հիդրոդինամիկ. մակարդակաչափման մեթոդ։ ԵՊԻ–ում կազմակերպել է ճշգրիտ ճարտարագիտագեոդեզ. չափումների ավտոմատացման հիմնախնդրային լաբորատորիա (1972)։

ՄՈՎՍԻՍՅԱՆ Սեդրակ Գարեգինի (1932–1979), կենսաքիմիկոս։ Կենսբ. գիտ. դ–ր (1967), պրոֆ. (1970)։ ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1977)։ Աշխ–ները վերաբերում են նյարդ. հյուսվածքում ամինաթթուների փոխանակության հարցերին։ Նյարդաքիմիկոսների միջազգ. ընկ–յան անդամ (1974–79)։

ՄՈՎՍԻՍՅԱՆ Սոս Միքայելի (ծ. 1923), խմբ–հրտ., լրագրող, թարգմանիչ։ ՀՀ վաստ. լրագրող (1990)։ 1967–ին՝ ՀԿԿ ԿԿ, 1981–91–ին՝ «***Լույս***» հրտչ–յունների տնօրեն, 1968–81–ին՝ ՀԽՍՀ Հայհրատպետկոմի նախագահի տեղակալ, 1999–ից՝ Հայաստանի գրահրատարակիչների ազգ. միության հիմնադիր–նախագահ։ Հեղինակ է «Ո՞ւր են տանում կածանները։ Հուշագրական ակնարկներ, նոթեր և խոհեր» (2008) ժող–ի։ ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2008)։

ՄՈՎՍԻՍՅԱՆ Վլադիմիր Միհրանի (1933–2014), պետ., կուս. գործիչ։ Գղտ. գիտ. դ–ր (2004)։ ՀԳԳԱ ակադ. (1997)։ 1984–90–ին՝ ՀԽՍՀ ՆԽ նախագահի 1–ին տեղակալ, 1990–ի ապրիլից՝ ՀԿԿ ԿԿ 1–ին քարտուղար, 1991–1996–ին՝ ՀՀ փախստականների հարցերով պետ. վարչության պետ, 1996–99–ին՝ ՀՀ գյուղնախարար, 1999–2004–ին՝ ՀՀ վարչապետի խորհրդ., 2004–ից՝ ՀՀ

անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն:

ՀՀ (1999), ԼՂՀ (2002) «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշաններ, ԽՍՀՄ ԺՏՆՅ 5 ոսկե մեդալներ:

ՄՈՎՍԻՍՅԱՆ Տիգրան Բեգլարի (1902–1986), անասնաբույժ: Գղտ. գիտ. դ-ր (1958), պրոֆ. (1961): Աշխ-ները վերաբերում են կենդանիների վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների ժամանակ ԿՆՀ-ի ախտաբան. ձևաբանության հարցերին:

ՄՈՎՍԻՍՅԱՆ Ֆելիքս Վազգենի (ծ. 1952), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (2005): Հեղինակ է «Հայ հասարակական միտքը և պարբերական մամուլը 19-րդ դարի լեհական ազգային-ազատագրական պայքարի մասին» (2002), «Եվրոպական ազգային-ազատագրական շարժումները հայ պարբերական մամուլում 1848–1852 թթ.» (2004), «XIX դ-ի առաջին կեսի եվրոպական ազգային-ազատագրական շարժումները և հայ հասարակական միտքը» (2006) և այլ աշխ-ների:

ՄՈՏԱԼՈՎԱ (Motalova) Լյուդմիլա (1935–1975), չեխ հայագետ, թարգմանչուհի: Չեխ. հրատարակել է Ա. Իսահակյանի արձակ գործերի «Որտե՞ղ է սփոփանքը» (1958) հատընտիրը, թարգմանել «Սովետական Հայաստան» (1966) գրքույկը, հայ ժող. հեքիաթների 2 ժող., Ե. Չարենցի, Պ. Սևակի բանաստեղծություններից, հայ գրողների արձակ ու չափածո մի շարք երկեր: Հեղինակ է հայագիտ. աշխ-ներին:

ՄՈՏԱՎՈՐ ԲԱՆԱՁԵՎԵՐ, ստացվում են $f(x) = f^*(x) + \varepsilon(x)$ տեսքի բանաձևերից, որտեղ $\varepsilon(x)$-ը մնացորդային անդամ է կամ սխալանք՝ փոքր մեծություն, որը գնահատումից հետո անտեսվում է: Օր.՝ $(1 + x)^2 \approx 1 + 2x$ Մ. բ. ստացվում է $(1 + x)^2 = 1 + 2x + x^2$ ճշգրիտ բանաձևից փոքր $|x|$-երի դեպքում:

ՄՈՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, *ֆունկցիաների տևության* բաժին. զբաղվում է ֆունկցիաների մոտավոր ներկայացմամբ, դրա հիման վրա ֆունկցիաների ուսումնասիրությամբ:

ՄՈՏԵԼՍՈՆ (Mottelson) Բենջամին Ռոյ (ծ. 1926), դանիացի հրեա ֆիզիկոս: Ատոմ. միջուկի ընդհանրացված մոդելի հեղինակներից է:

Նոբելյան մրց. (1975, Օ. *Բորի* և Ջ. *Ռեյնուոթերի* հետ):

ՄՈՏԵՒ (Mothes) Կուրտ (1900–1983), գերմանացի կենսաքիմիկոս: «Լեոպոլդինա» ակադ-ի նախագահ (1954–74), ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1971): Աշխ-ները վերաբերում են ալկալոիդների կենսասինթեզին, ազոտային փոխանակությանը և բույսերի աճի կարգավորիչներին:

ՄՈՏԿԱՆ, Մոտկի, գվոզ Արմ. Հայաստանում: Օսմ. վարչ. բաժանումով մտել է Բիթլիսի նհնգ-ի համանուն գվո-ի մեջ՝ ներառելով նաև Խութը (Խութ-Բռնաշեն): Որոշ աղբյուրներում Մ-ի մեջ հիշվում է Բիթլիսի արմ. Փարխանդի գյուղախումբը: XX դ-ի սկզբին բուն Մ. ունեցել է ավելի քան 70 բնակավայր: Կենտրոնը՝ գ. Դատվան: Համապատասխանում է *Աղձնիք* նհնգ-ի Գզեխղ կամ Գզեխ և Սալնաձոր գվո-ներին, որոնց XIV դ-ում տիրել է Հս. Իրաքից Հայկ. լ-աշխարհ տեղափոխված մոտիկի (մուդաքի) քրդ. ցեղը և կազմել «Մ.» անվանումով իշխանություն: ՀՀՊ-ի նախօրեին գվոկ-ի 30 գյուղերում բնակվել է ավելի քան 6,5 հզ. հայ: 1915-ին նրանց մի մասը կոտորվել է, ավելի քան 2 հզ-ը փրկվել են և հաստատվել Արլ. Հայաստանում:

ՄՈՏՈ... (լատ.՝ motor – շարժիչ), բարդ բառերի սկզբնամաս. ցույց է տալիս շարժուն, շարժվող լինելը (օր.՝ *մոտոցիկլ, մոտոռոլլեր*):

ՄՈՏՈՐԻ Նորինագա (1730–1801), ճապոնացի լուսավորիչ, բանասեր: Ուսումնասիրել է հին ճապոն. գրկ-ը, կազմել է «Կոճիկի»-ի մեկնությունը: Իդեալականացրել է Հին Ճապոնիայի պետ. (կայսեր.) կառուցվածքը, հանդես է եկել այդ գունատի դեմ, կոչ է արել վերականգնել կայսեր և սինտոյականության պաշտամունքը:

ՄՈՏՈՌՈԼԼԵՐ (< *մոտո*... և գերմ.՝ rollen – բառացի՝ շարժիչով ընթացող), *մոտոցիկլի* տարատեսակ՝ ավելի փոքրաչափ անիվներով: Նաշ-ը միագլան, երկտակտ է, հզորությունը՝ մինչև 8,2 *կՎտ*: Զարգացնում է մինչև 95 *կմ/ժ* արագություն, վառելիքի ծախսը՝ մինչև 2 *լ* 100 *կմ*-ի համար:

ՄՈՏՈՑԻԿԼ (< *մոտո*... և հուն.՝ kyklos – անիվ), 50 *սմ*^{3}-ից ավելի աշխ. ծավալով նաշ-ով (սովորաբար՝ կարբյուրատոր., երկտակտ կամ քառատակտ, հզորությունը՝ մինչև 75 *կՎտ*) երկանիվ կամ եռանիվ փոխադրամիջոց: Լինում են ճանապարհ. (արագությունը՝ մինչև 215 *կմ/ժ*, վառելիքի ծախսը՝ մինչը 5,8 *լ* 100 *կմ*-ի համար), մարզ. և հատուկ:

ՄՈՏՈՑԻԿԼԱՅԻՆ ՄՊՈՐՏ, տեխ. մարզաձև, սովոր. և մարզ. *մոտոցիկլներով* մրցումներ: Ներառում է **խճուղային, բոլորուղային** (տրեկ.), **սպիդվեյը** (մարզադաշտի արահետներում և սառցուղիներում), **ձիարշավարանային** (հողածածկ ճանապարհներում) մրցարշավները, **մոտորոլը** (մոտոցիկլով գնդակախաղ), նաև ռեկորդների սահմանման հատուկ մրցելույթները: Մ. ս-ի միջազգ. ֆեդերացիան՝ ՖԻՄ (FIM, հիմն.՝ 1904), ընդգրկում է ավելի քան 80 երկիր (2016): Եվրոպայի և աշխարհի առաջնություններն անցկացվում են 1936-ից:

ՄՈՏՏ (Mott) Նևիլ (1905–1996), անգլիացի ֆիզիկոս: 1954–71-ին ղեկավարել է Կավենդիշի լաբորատորիան: Աշխատել է չկարգավորված համակարգերի էլեկտրահաղորդականության տեսություն: 1970-ական թթ-ին հայտնաբերել է ճնշման և ջերմաստիճանի փոփոխությունների դեպքում բյուրեղի անցումը մետաղ. վիճակից դիէլեկտրիկականի (Մոտտի անցում): Նոբելյան մրց. (1977, Ֆ. *Անդերսոնի* և Ջ. *վան Ֆլեքի* հետ):

ՄՈՐ (More) Թոմաս (1477/78–1535), անգլիացի հումանիստ, պետ. գործիչ, գրող, ուտոպ. սոցիալիզմի հիմնադիրը: Եղել է *Էրազմ Ռոտերդամցու* մտերիմը: 1529–37-ին՝ Անգլիայի լորդ-կանցլեր: Լինելով պապի գերագույն իշխանության կողմնակից և կաթոլիկության միասնության ջատագով՝ Մ. հրաժարվել է թագավորին՝ որպես Անգլիկան եկեղեցու գլխի, երդում տալուց, որի պատճառով գլխատվել է: 1935-ին կաթոլիկ եկեղեցին Թ-ին սրբադասել է: Հեղինակ է «Ուտոպիա» (հրտ. լատ.՝ 1516, անգլ.՝ 1551, հայ.՝ 1935) երկի, որը համանուն երևակայական կղզու իդեալ. հասարակարգի նկարագիրն է, որտեղ չկա մասնավոր սեփականություն, աշխ-ը բոլոր քաղաքացիների պարտականությունն է, վերացված են մտավոր և ֆիզ. աշխ-ների տարբերությունները:

ՄՈՐ Հենրի (1614–1687), անգլիացի փիլ. և բանաստեղծ: Քննադատելով կարտեզիականությունը խորհրդապաշտ. պլատոնականության դիրքերից («Մետաֆիզիկայի ուղեցույց», 1671)՝ Մ. «տարածություն» հասկացությունը տարածել է նաև ոգու վրա, որի ազդեցությամբ Ի. Նյուտոնը տարածությունը բնորոշել է որպես «Աստծու աշխարհընկալում»: Հեղինակ է «Փիլիսոփայական պոեմներ» (1647), «Աստվածային երկխոսություններ» (1668) և այլ աշխ-ների:

ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԳՀԻ Երևանի, հիմնադրվել է 1937-ին: 1931–37-ին՝ Մայրության և մանկության պահպանության ինստ-ի հիմքի վրա, 1937–89-ին՝ Մանկաբարձության և գինեկոլոգիայի ԳՀԻ: Գիտ. աշխ-ները վերաբերում են կնոջ օրգանիզմի առանձնահատուկ ֆունկցիայի ֆիզիոլոգիայի և ախտաբանության, հղիության և ծննդաբերության տարբեր ախտաբան. վիճակների պատճառագիտ-յան, ախտածնության, բուժման ու կանխարգելման հարցերին: Զբաղվում են նաև կանանց անպտղության պատճառագիտ-յան, ախտորոշման, բուժման և կանխարգելման հարցերով: Կենտրոնը մեթոդ. և գիտագործն. բարձրորակ օգնություն է կազմակերպում հանրապետության ծննդօգնության հիմնարկներին, միաժամանակ այնտեղ պատրաստվում և վերապատրաստվում են ՀՀ մանկաբարձ-գինեկոլոգներ, նեոնատոլոգներ և միջին բուժանձնակազմը: Տնօրեններ՝ Գրիգոր Արեշյան, Պարթև Մարգարյան, Գրիգորի Օկոև, Կառլեն Ակոնց, Գեորգի Օկոև (1999-ից):

ՄՈՐԱ (Móra) Ֆերենց (1879–1934), հունգար գրող: Հեղինակ է Մ. Խորտիի դիկտատուրայի տարիների գյուղը պատկերող «Երգ ցորենի արտերի մասին» (1927) վեպի, Դիոկղետիանոսի ժամանակները նկարագրող «Ոսկե սարկոֆագ» (1932) պատմավեպի, նաև պատմվածքների ու հեքիաթների ժող-ների, այդ թվում՝ «Խոռամանկ աղվեսը» (1913), «Կախարդական մուշտակը» (1918, հայ.՝ 1984), «Կար-չկար, մի թագավորություն կար» (1925), «Վառարանի թագավորը» (հայ.՝ 1964), նաև բանաստեղծությունների:

ՄՈՐԱԼԵՍ (Morales, անվանել են Աստվածային՝ El Divino) Լուիս դե (մոտ 1520–1586), իսպանացի գեղանկարիչ: Մ-ի իսպանագոթ. ոճի ավանդույթներից սերող կերպարների («Պիետա», 1560–70) հուզավառ ոգեշնչվածությունը համադրված է մաներիզմի գեղանկարչությանը բնորոշ սառը գունային գամմայի և նկարչության վիրտուոզ «էմալային» տեխնիկայի հետ:

ՄՈՐԱԼԻՏԵ (ֆրանս.՝ moralité, լատ.՝ moralis – բարոյական), XV–XVI դդ-ի արևմտաեվրոպ. դրամատիկ. ժանր՝ ձևով՝ այլաբան., բովանդակությամբ՝ բարոյախրատ. («Ողջախոհ և անմիտը», 1436, «Աղքատ մարդը», XV դ., ևն): Մ-ի գործող անձինք ներկայացնում են վերաց. հասկացություններ (սեր, առաքինություն, մեղք, չարիք ևն), որոնք միմյանց հետ պայքարում են մարդու հոգու համար:

ՄՈՐԱԿԱՏՅԱՐ (Gallinago gallinago), *մրակտցարների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է, տարածված: Մարմնի երկ.՝ 25–27, թևերի բացվածքը՝ 44–47 *սմ*, կ. զ.՝ 93–110 *գ*: Կտուցը երկար է: Հաճախ թաքնվում է: Վտանգի պահին թռչում է կարճ տարածություններ՝ ճղճղան ձայներ արձակելով: ՀՀ-ում բնադրող զույգերի թիվը 1000-ից պակաս է: Ձմռանը գաղթում է Աֆրիկա:

գերը սակավաթիվ են: Զանգված. խմբեր գրանցվում են գարնան. և աշնան. չուի ընթացքում:

ՄՈՐԱԿՏՅԱՐՆԵՐ (Scolopacidae), ***քարադրանմանների*** կարգի թռչունների ընտանիք: Տեսակների թիվն աշխարհում ճշտված չէ: ՀՀ–ում տարածված է 24 տեսակ. բնադրում են միայն 5–ը (անտառակտցար, կարմրատ կտցար, սևուկ կտցար, սպիտակավիզ կտցար, կրկնակտցար), մյուս տեսակները հանդիպում են գարնան. և աշնան. չուի ընթացքում: ՀՀ տարածքով անցնող տեսակներից ամենաճանաչվածներն են կրկնակտցարը և մորակտցարը, ամենախոշորը մեծ արարիկն է (կ. զ.՝ 750–920 *գ*):

ՄՈՐԱՆՅԱՆ Սյուզան–Էլիզաբեթ (ծ. 1952), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1994): Հայ կանանց միջազգ. ընկերակցության նախագահ (1999–2001 և 2003–ից): Աշխ–ները վերաբերում են Հայկ. հարցի և Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներին:

ՄՈՐԱՎԻԱ (Moravia) Ալբերտո (Պինկեռլե, 1907–1990), իտալացի գրող: Հեղինակ է «Անտարբեր մարդիկ» (1929), «Հռոմեացի կինը» (1947), «Հարմարվողը» (1951), «Չոչարա» (1957, հայ.՝ 1962) վեպերի, «Հռոմեական պատմվածքներ» (1954), «Դրախտ» (1970) և այլ պատմվածքների ժող–ների: Հայ. հրատարակվել են նաև «Տագնապ» (1965) պատմվածքների ժող–ը, «Արհամարհանք» (1966) վեպը:

ՄՈՐԱՎԻԱ, (չեխ.՝ Morava), պատմ. մարզ Չեխիայում: VI դ–ից բնակվեցվել է սլավոններով (մորավներ և ուր.): IX–X դդ–ում՝ ***Մեծ մորավական տերության*** կազմում: 1918–ից՝ Չեխոսլովակիայի Հանրապետության կազմում: 1938–39–ին օկուպացրել է Գերմանիան. ներառել է «Բոհեմիայի ու Մորավիայի պրոտեկտորատի» մեջ: 1945–ի ապրիլ–մայիսին ազատագրվելուց հետո մտել է Չեխոսլովակիայի (Չեխիա) կազմի մեջ:

ՄՈՐԱՏԻՆ (Ֆեռնանդես դե Մորատին) Լեանդրո (1760–1828), իսպանացի դրամատուրգ: Ազգ. լուսավոր. դրամայի հիմնադիրը: Հեղինակ է «Ծերունին և աղջիկը» (1795), «Կեղծ սուրբը» (1804), «Երբ աղջիկներն ասում են «այո»» (1806) կենցաղ. թեմաներով կատակերգությունների:

ՄՈՐԳԱՆ (Morgan) Թոմաս Հանտ (1866–1945), ամերիկացի կենսաբան: Գենետիկայի հիմնադիրներից: ԽՍՀՄ ԳԱ արտ. պատվ. անդամ (1932), ԱՄՆ ԳԱԱ նախագահ (1927–31): Մ–ի և նրա դպրոցի ներկայացուցիչների (Գ. Ջ. Մյոլլեր, Ա. Գ. Ստյորտևանտ և ուր.) հիմնավորած ժառանգականության քրոմոսոմ. տեսությունը, քրոմոսոմներում գենների դասավորության հաստատած օրինաչափությունները նպաստել են Մենդելի օրենքների բջջաբան. մեխանիզմների բացահայտմանը և բնական ընտրության տեսության գենետիկ. հիմունքների մշակմանը: Նոբելյան մրց. (1933):

ՄՈՐԳԱՆ Ժան Ժակ Մարի դը (1857–1924), ֆրանսիացի հնագետ, երկրաբան, ազգագրագետ, պատմաբան: 1887–88–ին Դերեդի ավազանի դամբարանադաշտերում պեղել է 956 դամբարան, որից 582–ը՝ ***Մուսիերիում***: Հեղինակ է «Ակնարկ ազգությունների մասին» (1917), «Հայ ժողովրդի պատմությունը...» (1919, հայ. հրտ.՝ 1947) և այլ աշխ–ների: Դատապարտել է հայ ժողղ–ի նյութ. և հոգևոր մշակույթի ոչնչացման թուրք. քաղ–յունը: 1916–17–ին հրապարակած իր հոդվածներում պահանջել է երիտթուրք պարագլուխներին և հայկ. կոտորածների բոլոր մեղավորներին հանձնել չեզոք երկրների, որպեսզի նրանց դատի միջազգ. դատարանը:

ՄՈՐԳԱՆ Լուիս Հենրի (1818–1881), ամերիկացի պատմաբան, ինագետ, ազգագրագետ: ԱՄՆ ԳԱԱ անդամ (1875): Նախնադար. հաս–յան էվոլյուցիոն ուսմունքի հիմնադիրներից: Աշխ–ները վերաբերում են նախնադար. ընտանիքին ու ամուսնությանը: Հեղինակ է իրոկեզների վերաբերյալ դաս. ուսումնասիրությունների:

ՄՈՐԳԱՆ Միշել (Սիմոնա Ռուսել, 1920–2016), ֆրանսիացի դերասանուհի: 1935–ից՝նկարահանվել է կինոյում («Փոթորիկ», «Աշուշների առափնյակը», «Քարշակներ», «Հովվերգական սիմֆոնիա», «Մեծ զորավարժություններ» ևն): Կինոյում կերտել է իդեալ. սիրուհու ռոմանտիկ. կերպարներ:

ՄՈՐԳԱՆ Ուիլյամ Ուիլսոն (1906–1994), ամերիկացի աստղագետ: Հայտնաբերել է ***Գալակտիկայի*** պարուրաձև թևերը:

ՄՈՐԳԱՆ (De Morgan) Օգաստես դը (1806–1871), շոտլանդացի մաթեմատիկոս և տրամաբան: Լոնդոնի մաթ. ընկ–յան հիմնադիր–նախագահը (1866): Աշխ–ները վերաբերում են հանրահաշվին, շարքերի տեսությանը: Ջ. ***Բուլից*** անկախ տվել է մաթ. տրամաբ–յան հիմն. գաղափարները:

ՄՈՐԳԱՆԻ (Morgagni) Ջովաննի Բատիստա (1682–1771), իտալացի բժիշկ և անատոմ: Ախտաբան. անատոմիայի հիմնադիրներից: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1734): «Անատոմների հայտնաբերած հիվանդությունների տեղադրության և պատճառների մասին» (հ. 1–2, 1761) աշխ–յան մեջ բացատրել է բազմաթիվ հիվանդությունների ախտածնությունը և նկարագրել մի շարք անատոմ. գոյացություններ, որոնք կոչվում են իր անունով:

ՄՈՐԳԱՆՆԵՐ (Morgan), ԱՄՆ ֆին. խումբ. ձևավորվել է XIX դ–ի վերջին: Ազդեցության ոլորտներն են բանկ. գործը, վերամշակող արդ–յունը, երկաթղ. տրանսպորտը: Առաջատար ֆին. ինստ–ներն են «Մորգան Գարանթի Թրասթ Քոմփանի օֆ Նյու Յորք» առևտրային բանկը, «Ջ. Պ. Մորգան ընդ Քոմփանի» բանկ. տունը, «Մորգան Սթենլի ընդ Քոմփանի» ներդրում. բանկը: Մ. վերահսկում են «Փրուդենշել» և «Նյու Յորք Լայֆ» ապահովագր. ընկ–ների ակտիվների զգալի մասը, ներդրում. բանկերի ցանցը, «Յունայթեդ Սթեյթս Սթիլ», «Ջեներալ Էլեքթրիք», «Ջեներալ Մոթորս» արդ. կորպորացիաները:

ՄՈՐԳԵՆԹԱՈՒ (Morgenthau) Հենրի (1856–1946), ամերիկացի դիվանագետ, իրավաբան: 1913–16–ին՝ Թուրքիայում ԱՄՆ–ի դեսպան, ԱՀՊ–ն սկսվելուց հետո ներկայացրել է նաև Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Իտալիայի և այլ երկրների շահերը Թուրքիայում: Մեծ եղեռնի օրերին՝ Թալեաթ և Էնվեր փաշաների հետ հանդիպումների ժամանակ, ապարդյուն փորձել է կանխել արևմտահայության տեղահանությունն ու կոտորածը: Մ–ի «Հայաստանի ողբերգությունը» (1918), «Բոսֆորի գաղտնիքները. 1913–1916» (1918) երկերը, «Դեսպան Մորգենթաուի հուշերը» (1918, հայ հրտ.՝ 1919, 2012) ևն կարևոր ու արժանահավատ վկայություններ են պարունակում Հայոց ցեղասպանության մասին:

ՄՈՐԳԵՆՇՏԵՌՆ (Morgenstern) Օսկար (1902–1977), ամերիկացի տնտեսագետ և մաթեմատիկոս (ծագումով՝ գերմանացի): Աշխ–ները վերաբերում են տնտ. հիմնախնդիրների մաթ. ու վիճակագր. վերլուծության եղանակների ու մեթոդների կատարելագործմանն ու հետագա զարգացմանը, միջազգ. առևտրի հարցերին: Ջ. Ֆոն Նեյմանի հետ շարադրել է խաղերի համակարգված տեսությունը (1944):

ՄՈՐԴԻՆՈՎ (կեղծանունը՝ Ամմա Աչչըգըյա) Նիկոլայ Եգորի (1905/06–1994), յակուտ գրող: Յակուտ. ԻԽՍՀ ժող. գրող (1966): Հեղինակ է պատմվածքների, վիպակների, պիեսների, նաև յակուտ ժողղ–ի նոր կյանքը պատկերող «Գարնանային ժամանակ» (1944) վեպի, «Մարդն ու ստեղծագործությունը...» (1975) հուշերի և հոդվածների ժող–ի:

Սախա–Յակուտիայի Պետ. մրց. (1993):

ՄՈՐԴՅՈՒԿՈՎԱ, Նոնա (Նոյաբրինա) Վիկտորովնա (1925–2008), ռուս. կինոդերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1974): «Երիտասարդ գվարդիա», «Օտար ազգականը», «Հասարակ պատմություն», «Ռուսական դաշտ», «Ճահճուտ», «Կոմիսար», «Մայրը» և այլ ֆիլմերում մարմնավորել է ավանդ., նաև ժամանակակից ռուս կնոջ կերպարներ: Հյութեղ կատակերգականությունը, սուր բնորոշությունը արտացոլվել են «Բալզամինովի ամուսնությունը», «Աղամանդե ձեռք», «Հարազատներ» ֆիլմերում: ԽՍՀՄ (1949), ՌԽՖՍՀ (1973) Պետ. մրց–ներ:

ՄՈՐԴՈՎԻԱ, **Մորդովիայի Հանրապետություն**, ՌԴ Մերձվոլգյան դաշն. օկրուգում: Տարածքը՝ 26,1 հզ. *կմ*², բն.՝ 833 հզ. (2009, որից մորդվաներ՝ 283,9 հզ.): Ունի 22 շրջան, 7 քաղաք, 14 քտա: Վարչ. կենտրոնը՝ ***Սարանսկ***: Կազմավորվել է 1928–ին՝ որպես Մորդով. ԻՕ, 1930–ին վերակազմավորվել է ԻՄ–ի, 1934–ից՝ Մորդով. ԻԽՍՀ, 1994–ից՝ներկա անվանումով: Գլխ. գետերը՝ Սուրա և Մոկշա: Տարածքի 1/4–ն անտառապատ է:

ՄՈՐԴՎԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, ուգրաֆինն. լեզվաընտանիքի ֆինն. (արմ.) ճյուղի լեզուներ: Ներառում են էրզյա և մոկշա լեզուները: Գրի հիմքում ռուս. այբուբենն է:

ՄՈՐԴՎԱՆԵՐ, ուգրաֆինն. ժողղ: Ընդհ. թիվը ՌԴ–ում՝ 843,4 հզ. [2002, Մորդովիայում՝ 283,9 հզ., Սամարայի (86 հզ.), Պենզայի (70,7 հզ.), Ուլյանովսկի (50,2 հզ.) մարզերում, ևնն]: Բաժանվում են էրզյա և մոկշա ազգագր. խմբերի: Լեզուն՝ մորդվին.: Հավատացյալները հիմնականում քրիստոնյա են, կան նաև լյութերականներ:

ՄՈՐԴՎԻՆՈՎ Նիկոլայ Դմիտրևիչ (1901–1966), ռուս. դերասան: ՌԽՖՍՀ (1947), ԽՍՀՄ (1949) ժող. արտիստ: 1925–ից՝ Ց. Ա. Ջավադսկու ղեկավարած ստուդիայի, 1940–ից՝ Մոսկվայի Մոսսովետի անվ. թատրոնի դերասան (Օթելլո, Լիր՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», «Լիր արքա», Օգնև՝ Ա. Ե. Կոռնեյչուկի «Ռազմաճակատ»), նկարահանվել է կինոյում («Կոտովսկի», «Դիմակահանդես» ևն):

ԽՍՀՄ Պետ. (1942, 1949, 1951), Լենինյան (1965) մրց–ներ:

ՄՈՐԵԼԼԻ (Morelli) Դոմինիկո (1826–1901), իտալացի գեղանկարիչ: Հեղինակ է կրոն., պատմ., գր. թեմաներով նկարների («Պատկերամարտիկներ», 1854, «Քրիստոսի ծաղրումը», 1875, ևն), որոնց բնորոշ

են դրամատիզմը, կենցաղ. մանրամասների հավաստի պատկերումը:

ՄՈՐԵԼԼԻ (Morelly) Էթիեն Գաբրիել (մոտ 1717–1778–ից հետո), ֆրանսիացի փիլ.: XVIII դ–ի ֆրանս. ուտոպ. կոմունիզմի ներկայացուցիչ: Հեղինակ է «Բնության կողեքսը կամ նրա օրենքների իրական ոգին» (1755, անանուն հրատարակվել է Ամստերդամում) աշխ–յան:

ՄՈՐԵԼԼԻ Ռինա (1908–1976), իտալացի դերասանուհի: 1930–ական թթ–ից հանդես է եկել Հռոմի «Էլիսեո» թատրոնում: 1940–50–ին աշխատել է Լ. Վիսկոնտիի ղեկավարությամբ, որի շնորհիվ ճանաչվել է որպես ժամանակի հայտնի դերասանուհի: 1946–ին (դերասան Պ. Ստոպպայի հետ) հիմնադրել է սեփ. թատերախումբ: Նկարահանվել է կինոյում:

ՄՈՐԵԽ (Acrididae), *իսկական մորեխների* ընտանիքի հոտային միջատ: Անապատային, չվող (ասիական և միջինոռս.), իտալ. և մարոկկոյական Մ–ները գղտ. և վայրաճ բույսերի վնասատուներ են: Թրթռուրների կուտակումները և հոտերը ոչնչացնում են ամբողջ բուսականությունը:

ՄՈՐԵԽԱՁԳԻՆԵՐ (Acridoidea), *ուղղաթևանների* կարգի միջատների վերնաընտանիք: Երկ.՝ մինչև 9 *սմ*: Տարբերում են ոչ հոտային Մ. կամ *զամբիկներ* և հոտային՝ *մորեխներ*: Հայտնի է մոտ 7 հզ. տեսակ: Բուսակեր են. գղտ. մշակաբույսերի լուրջ վնասատուներ են: ՀՀ–ում հայտնի է Մ–ի 105 տեսակ՝ տարածված բոլոր գոտիներում:

ՄՈՐԵՀԱՎ ԴԱԼԼԱԿ (Hippolais pallida), *շահրիկների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող: Մարմնի երկ.՝ 12–13,5, թևերի բացվածքը՝ 18–20 *սմ*: Ապրում է թփուտ. կիսաանապատներում, չոր լ–տափաստաններում, գետահովիտներում: Մնվում է անողնաշարներով: Պահպանության լրացուցիչ միջոցների կարիք ունի:

ՄՈՐԵՀԱՎԵՐ, *շահրիկների* ընտանիքի թռչուններ: ՀՀ–ում հայտնի է 3 տեսակ՝ անապատ., դալուկ և կանաչ Մ. (վերջինիս կենսակերպն ուսումնասիրված է մասնակի): Թփուտային, հիմնականում՝ լոակյաց, թաքնվող, կիսաանապատներին հարմարված թռչուններ են:

ՄՈՐԵՆԻ (Fragaria vesca), **ելակ վայրի, իծամորի, գետնաթութ**, *վարդազգիների* ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ, հատապտղային մշակաբույս է: Հայտնի է մոտ 50 տեսակ, մշակում են հիմնականում պարտեզայինը կամ անանասայինը, որը հաճախ սխալմամբ անվանում են *ելակ*: Ստացվել է XVIII դ–ում՝ վիրջինիական և չիլիական Մ–ների հիբրիդացմամբ: Պտուղները (հատապտուղ) պարունակում են շաքար, օրգ. թթուներ, C վիտամին, դաբաղանյութեր ևն: ՀՀ–ում մշակվում են ֆեստիվալային, Արշալույս, Զենգա Զենգանա, Վաղկոկինյան, ցուցահանդեսային և այլ տեսակներ:

ՄՈՐԵՆՈ (Moreno) Ջակոբ Լևի (1892–1974), ռումին սոցիոլոգ, հոգեբան և հոգեբույժ: Սոցիոմետրիայի հիմնադիրը: 1927–ից՝ ԱՄՆ–ում: Հիմնադրել է Սոցիոմետրիայի և հոգեդրամայի ինստ–ը (1940, Մորենոյի անվ. ինստ.): Հաս–յան փոքր խմբերում առկա հակասությունները վերացնելու նպատակով մշակել է սոցիոմետր. մեթոդներ և կարծում էր, որ դրանք կիրառելի են նաև ողջ հաս–յան համար:

ՄՈՐԵՏՏՈ (Moretto, Բռնովիչինո) Ալեսանդրո (մոտ 1498–1554), իտալացի գեղանկարիչ: Գործերն առանձնանում են կերպարների հստակությամբ, անխռով տրամադրությամբ, արծաթափայլ լուսավոր գամմայով («Քրիստոսը Էմմաուսում», մոտ 1526):

ՄՈՐԶԵ (Morse) Սեմյուել Ֆինլի Բրիզ (1791–1872), ամերիկացի նկարիչ և գյուտարար: Նյու Յորքի Գծանկարի ազգ. ակադ–ի հիմնադիրներից և 1–ին նախագահը (1826–45): 1837–ին հայտնագործել է էլեկտրամեխ. *հեռագրական ապարատը* (1950–ական թթ–ի կեսին գործածությունից դուրս է մղվել Մ–ի ապարատը, տառատիպ հեռագր. ապարատը): 1838–ին մշակել է հեռագր. կոդ՝ *Մորզեի կոդը* (Մորզեի այբուբենը):

ՄՈՐԶԵԻ ԿՈԴ (Մորզեի այբուբեն), անհավասարաչափ հեռագր. կոդ, որտեղ յուրաքանչյուր տառ կամ նշան ներկայացված է էլ. հոսանքի կարճ (կետ) և դրանից եռակի երկար (գիծ) տարրերի համակցությունների: Ժամանակակից հեռագրությունից դուրս է մղվել հավասարաչափ հեռագր. կոդի ներդրումով: Մ. կ. օգտագործում են հիմնականում ռադիոսիրող. կապում:

ՄՈՐԹԵԿԵՐՆԵՐ (Dermestidae), *կաշեկերների* ընտանիքի բզեզների տեսակներ: Երկ.՝ 1–11 *մմ*: Հայտնի է մոտ 2500 տեսակ: Թռչունների, հազվադեպ՝ կաթնասունների մակաբույծներ են, սնվում են եղջրացող էպիթելով և նրա ածանցյալներով (փետուր, աղվամազ, մազեր). զանգված. վարակման դեպքում նվազում է ընտանի կենդանիների կենսունակությունը:

ՄՈՐԹԵՆՍԵՆ (Mortensen) Դեյլ Թոմաս (1939–2014), ամերիկացի տնտեսագետ: Աշխ–ները վերաբերում են աշխատաշուկայի վերլուծության մեթոդներին:

Նոբելյան մրց. (2010, Պ. *Դայմոնդի*, Ք. *Պիսարիդեսի* հետ):

ՄՈՐԻԱԿ (Mauriac) Կլոդ (1914–1996), ֆրանսիացի գրականագետ, գրող: Ֆ. *Մորիակի* որդին: Հարել է «Նոր վեպ»–ին: Հեղինակ է «Յուրաքանչյուր կին ճակատագրական է» (1957), «Ավելացում» (1963) վեպերի, արվ–ում մոդեռնիզմի մասին «Ժամանակակից գրականություն» (1958) աշխ–յան, «Անշարժ ժամանակ» (հ. 1–10, 1974–88) ինքնակենսագր. գրաշարի, նաև պիեսների, սցենարների, Ժ. Կոկտոյի, Ա. Մալրոյի, Ա. Ժիդի մասին էսսեների:

ՄՈՐԻԱԿ Ֆրանսուա (1885–1970), ֆրանսիացի գրող: Կ. *Մորիակի* հայրը: Ֆրանսիայի ակադ–ի անդամ (1933): Դիմադրության շարժման մասնակից: Հեղինակ է «Համբույր բորոտին» (1922), «Իժերի կծիկը» (1932, հայ.՝ 1962), «Ոչ մի տեղ չտանող ճանապարհներ» (1939), «Գառնուկը» (1954) և այլ վեպերի, «Ժան Ռասինի կյանքը» (1928), «Վիպասանը և նրա գործող անձինք» (1933, 1970) և այլ աշխ–ների, նաև հուշերի: Ֆրանսիայի ակադ–ի Մեծ (1926), Նոբելյան (1952) մրց–ներ:

ՄՈՐԻԿՅԱՆ Այդին Էդվարդի (1958–2009), լրագրող, խմբ.: 1990–97–ին՝ *«Հայաստանի Հանրապետություն»* օրաթերթի հիմնադիր–խմբ., 2001–03–ին՝ «Հայացք Երևանից» ամսագրի, 2002–03–ին՝ «Օրբան», 2007–08–ին՝ «Ժամանակ» օրաթերթերի գլխ. խմբ.: Հեղինակ է «Ժուռնալիստիկա. ինչ, ինչպես, ինչու» (2006) հրապարակախոս, «Ասացի և ազատեցի հոգին իմ» (2010), «Միայնակ ծերունին, որ զրուցակից էր փնտրում» (2010), «Մնացյալ կյանքի առաջին օրը» (2013) հոդվածների, ակնարկների ժող–ների: Թարգմ–յուններ է արել ճապոն. պոեզիայից:

ՄՈՐԻԿՅԱՆ Էդվարդ Սարգսի (1927–2002), պետաբույծ–ընտրասերումնաբան: Գղտ. գիտ. դ–ր (1986): Հայտնաբերել և նկարագրել է դեղձենու, ծիրանենու, սալորենու 500–ից ավելի սորտեր ու տեսակներ, ստեղծել է ծիրանենու, դեղձենու բազմաթիվ սորտեր:

ՄՈՐԻՍ (Morris) Չառլզ Ուիլյամ (1901–1979), ամերիկացի փիլ.: Պրագմատիզմի գաղափարները զուգակցել է տրամաբ. էմպիրիզմի որոշ դրույթների հետ: Զևակերպել է նշանագիտ–յան (սեմիոտիկա) հիմն. հասկացություններն ու սկզբունքները:

ՄՈՐԻՍՈՆ (Morrison) Թոնի (ծ. 1931), ամերիկացի կին գրող: Աֆրոամերիկ. գրկյան ներկայացուցիչ: Հեղինակ է «Սուլա» (1973), «Մողոմոնի երգը» (1977), «Սիրելին» (1987) վեպերի, որտեղ անդրադարձել է աֆրոամերիկ. էթնոռասայական ընդհանրության մտածելակերպի առանձնահատկություններին, ռետրո ոճով «Ջազ» (1992) վեպի, հրապարակախոս. և մանկ. գրքերի: Նոբելյան մրց. (1993):

ՄՈՐԻՋ (Moriez) Ժիգմոնդ (1879–1942), հունգար գրող: Հեղինակ է «Ոսկին ցեխի մեջ» (1911), «Աղայական պաճուճանքներ» (1927), «Ազգականներ» (1930), «Եղիր բարի մինչև մահ» (1920) վեպերի, «Էրդեյ» (1922–33) և այլ պատմ. եռերգությունների, «Իմ կյանքի վեպը» (1939) ինքնակենսագր. երկի: Հայ. են հրատարակվել «Վերջին Բեհյարը» (1964) պատմվածքների ժող–ը, «Տոթակեզ դաշտեր» (1985) վեպը:

ՄՈՐԻՋ Յունննա Պետրովնա (ծ. 1937), ռուսագիր հրեա բանաստեղծուհի: Հեղինակ է «Խաղողի որթ» (1970), «Կյանքի լույսի ներքո» (1977), «Երրորդ աչք» (1980), «Կապույտ կրակ» (1985), «Այս բարձր ափին» (1987), «Զայնի որջում» (1990), «Երես» (2000), «Գեղեցիկն ավելորդ չի լինում» (2006) և այլ քնար. ժող–ների, մանկ. բանաստեղծությունների: Կատարել է թարգմ–յուններ: ՌԴ Ա. Դ. Սախարովի անվ. (2004), Կառ–յան (2011) մրց–ներ:

ՄՈՐԽԵՐ, **մորկեղներ**, *դիսկոմիցետների* խմբի սնկերի ցեղ: Գլխարկը ծակոտիավոր–կողավոր է՝ եզրերով ոտիկին սերտաճած: Հայտնի է 6 տեսակ. ՀՀ բոլոր մարզերի անտառներում տարածված են սովոր. մորխասունկը, կոնաձև մորկեղը և գլխարկ մորկեղայինը:

ՄՈՐՄ (Solanum), մորմազգիների ընտանիքի խոտաբույսերի, թփերի, կիսաթփերի, երբեմն՝ փաթաթվող բույսերի ցեղ: Հայտնի է մոտ 1700 տեսակ՝ լայնորեն տարածված Հվ. Ամերիկայում: Որոշ Մ–եր թունավոր են:

ՄՈՐՄԱՋԳԻՆԵՐ (Solanaceae), երկշաքիլ. ծաղկային բույսերի (միամյա և բազմամյա խոտաբույսեր են, հազվադեպ՝ թփեր, լիաններ ու փոքր ծառեր) ընտանիք: Հայտնի է մոտ 2500 տեսակ (80–90 ցեղ): ՀՀ–ում աճում են ավելի քան 20 վայրաճ և մշակովի Մ.: Տարածված են բարեխառն, արևադարձ. և մերձարևադարձ. գոտիներում (գլխավորապես՝ Հվ. և Կենտր. Ամերիկայում): Կարևորագույն ցեղերն են *մորմը*, ծխախոտը, մանդրագորան: Շատերն արժեքավոր պարեն. (կարտոֆիլ, լոլիկ ևն), դեղատու (մահամորմ, բանգի, սկոպոլիա ևն), գեղազարդիչ բույսեր են:

ՄՈՐՄԵՐ, **տարանտուլներ**, գայլասարդերի ընտանիքի իլկոզա սեռի մի քանի տեսակների հավաքական անվանումը: Ապրում են քարերի տակ, մինչև 20 *սմ*

խոր–ներում, գետնափոր բներում: Էգի մարմնի երկ.՝ 3,5 *սմ*: Խայթոցը ցավոտ է, սակայն մարդու համար ոչ վտանգավոր: XV–XVII դդ–ում Մ–ի խայթոցը համարել են ցնցումների («տարանտիզմ») պատճառ, որը փորձել են բուժել տարանտելլա արագ պարով (Մ–ի և պարի անվանումը ծագել են Տարանտո ք–ի անվանումից):

ՄՈՐՄՈՆՆԵՐ, «Վերջին օրվա սրբեր», աղանդ՝ ստեղծել է Ջ. Սմիթը (ԱՄՆ, XIX դ–ի 1–ին կես) և 1830–ին հրատարակել Մ–ի դավանանքի գլխավոր սկզբնաղբյուրը՝ «Մորմոնի գիրքը» (իբրև հետագայում ԱՄՆ տեղափոխված իսրայելցի Մորմոն մարգարեի խորհրդավոր նամակները): Մ–ի համայնքը Յուտա նահ–ում Հին Իսրայելի նմանությամբ 1847–49–ին հիմնադրել է Մ–ի թեոկրատ. պետություն, որն իր հատուկ կարգավիճակը պահպանել է մինչև XIX դ–ի վերջը: Մ. քարոզել են բազմակնություն (պաշտոնապես վերացվել է 1890–ին): Մ–ի դավանաբանության աղբյուր է նաև Աստվածաշունչը:

«ՄՈՐՆԻՆԳ ՍԹԱՐ» («Morning Star» – «Առավոտյան աստղ»), Մեծ Բրիտանիայի կոմկուսի օրաթերթ (1930–ից, Լոնդոն՝ անգլ.), մինչև 1966–ը՝ «Դեյլի Ուորքեր» («Daily Worker»): 2004–ից՝ առցանց:

ՄՈՐՈ Ժաննա (1928–2017), ֆրանսիացի դերասանուհի: Նուրբ հոգեբ. դերերի վարպետ: Նկարահանվել է Ֆ. Տրյուֆֆոյի, Մ. Անտոնիոնիի, Լ. Բունյուելի, Ռ. Վ. Ֆասբինդերի և ուր. ֆիլմերում («Ժյուլը և Ջիմը», «Գիշեր», «Սպասուհու օրագիրը», «Յոթ օր, յոթ գիշեր», «Կերել», «Կախարդական սեր», «Դեմքեր» ևն), նկարահանել է «Լույս» (1976) ֆիլմը: Խաղացել է նաև թատրոնում:

Կաննի (1960), Վենետիկի (1991, «Ոսկե առյուծ») կփ–երի մրց–ներ:

ՄՈՐՈ ՋՈՐՈ ՎԱՆՔ, Ծովիզի վանք, V դ–ի ճարտ. համալիր ՀՀ Տավուշի մարզի Լուսահովիտ (նախկին Ծովիզ) գ–ից հվ–արմ.: Վանքի Սբ Աստվածածին եկեղեցին գմբեթավոր քառախորան կառույց է, խորանները և գմբեթակիր կամարները պայտաձև են: Շուրջը տարածված են խաչարձաններ, գերեզմաններ: XII–XIII դդ–ում եղել է հոգևոր կենտրոն, գործել է մինչև XIX դ.: Նորոգվել է 1980–ական թթ–ին:

ՄՈՐՈԶՈՎ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (1904–1979), ռուս կոնստրուկտոր, ճարտարագիտ. զորքերի գեն–մայոր (1945): Տեխ. գիտ. դ–ր (1972): Սոց. աշխ. հերոս (1943, 1974): Մ–ի ղեկավարությամբ ստեղծվել են ԲՏ–2, ԲՏ–5, ԲՏ–7 և այլ թեթև տիպի տանկեր:

ԽՍՀՄ Պետ. (1942, 1946, 1948), Լենինյան (1967) մրց–ներ:

ՄՈՐՈԶՈՎ Բորիս Աֆանասևիչ (ծ. 1944), ռուս ռեժ.: ՌԴ արվ. վաստ. գործիչ (1993), ՌԴ ժող. արտիստ (1998): 1983–87–ին՝ Մոսկվայի Ա. Ս. Պուշկինի անվ., 1988–ից՝ Փոքր թատրոնների, միաժամանակ՝ հեռուստատեսության, 1995–ից՝ Ռուս. բանակի կենտր. թատրոնի գլխ. ռեժ.: Բեմադրել է Ի. Դրուցեի «Մեր ջահելության թռչունները» (1973), Է. Ռոստանի «Սիրանո դը Բերժըրակ» (1980), Վ. Կ. Առոյի «Տեսնք, ով է եկել» (1982), Ն. Վ. Գոգոլի «Ամուսնություն» (1987), Վ. Շեքսպիրի «Ոչնչից մեծ աղմուկ» (1996), «Համլետ» (2006) և այլ գործեր:

ՄՈՐՈԶՈՎ Միխայիլ Միխայլովիչ (1897–1952), գրականագետ, թատերագետ, թատեր. քննադատ, թարգմանիչ: Խորհրդ. շրջանի շեքսպիրագիտ–յան հիմնադիրներից («Շեքսպիրի պիեսների մեկնաբանություններ», 1941, «Շեքսպիր», 1947, ևն): Բարձր է գնահատել Վ. Փափազյանի, Վ. Վաղարշյանի դերասան. արվ–ը, անդրադարձել հայ բեմում շեքսպիրյան բեմադրություններին:

ՄՈՐՈԶՈՎ Վլադիմիր Իվանովիչ (ծ. 1940), ռուս մարզիկ (բայդարկաներով թիավարություն): ԽՍՀՄ ս. վ. վ. (1964): Օլիմպ. խաղերի (1964, 1968, 1972), աշխարհի (1966, 1970–71), Եվրոպայի (1967, 1969), ԽՍՀՄ (1962–72) չեմպիոն:

ՄՈՐՈՆՆԵՐ (իսպ.՝ moro – մավր), ժողդ–ների խումբ Ֆիլիպինների հվ–ում: Նեբառում է մարանաո, մագինդանաո, սանգիլի (Մինդանաո կղզում), սուլու, սամալ (Մինդանաո և այլ կղզիներում, Սուլու կղզեխմբում), յականներ (Սուլու, Բասիլան կղզեխմբերում) ժողդ–ներին ևն: Ընդհ. թիվը՝ 3,5 մլն (2010): Խոսում են ինդոնեզ. խմբի լեզուներով: Հավատացյալները սուննի մահմեդական են:

ՄՈՐՈՆՈՒԲՈՒ Խիսիկավա (մոտ 1620–1694), ճապոնացի գրաֆիկ, գեղանկարիչ: Ուկիյո–է դպրոցի հիմնադիրներից: Զավեշտ. ժանր. տեսարանների վարպետ է:

ՄՈՐՏՈՆ (Morton) Ուիլյամ Թոմաս Գրին (1819–1868), ամերիկացի ատամնաբույժ: Առաջինն է (1846) գործն. վիրաբուժության մեջ ներդրել եթերով նարկոզը:

ՄՈՐՈՒ ՇԱՀՐԻԿ (Silvia curruea), *շահրիկների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 12,5–13,5, թևերի բացվածքը՝ 16,5–20,5 *սմ*, կ. զ.՝ 11–12 *գ*: Արուները չափազանց շարժունակ են, աղմկոտ ճայնով անընդմեջ ու երկար ժամանակ երգում են թփուտների թաքստոցներում: Օգտակար է. ոչնչացնում է վնասատուներին:

ՄՈՐՈՒԱ (Maurois) Անդրե (Էմիլ Էրզոգ, 1885–1967), ֆրանսիացի գրող: Ֆրանսիայի ակադ–ի անդամ (1938): Հեղինակ է «Բայրոն» (1930), «Երեք Դյումա» (1957, հայ.՝ 1965), «Պրոմեթևս կամ Բալզակի կյանքը» (1965, հայ.՝ 1972) և այլ կենսագր. վեպերի, «Մտքեր կարդացող մեքենան» (1937) և այլ նովելների, նաև փիլ. հեքիաթների ու այլ գործերի: Հայ. հրատարակվել են նաև «Փարիզ» (1976), «Դոն Ժուան կամ Բայրոնի կյանքը» (1980), «Հույսեր և հուշեր» (1986), «Օլիմպիո կամ Վիկտոր Հյուգոյի կյանքը» (1990) երկերը:

ՄՈՐՈՒ–ՄԱՆԳԲԵՏՈՒՆԵՐ, ժողդ–ների (մորու, մադի, լոգո, լենդու, մանգբետու ևն) խումբ Կոնգոյի ԺՀ–ում, Կոնգոյի Հանրապետությունում, Ուգանդայում և Սուդանում: Ընդհ. թիվը՝ 3 մլն (2010): Խոսում են նեղոս–սահարյան լեզուների կենտրոնասուդանյան լեզվաընտանքի լեզուներով: Հիմնականում պահպանում են ավանդ. հավատալիքները:

ՄՈՐՈՒ–Ք ԿԱՐՈ, Ավոյան Կարապետ (1875–1950), ազգ–ազատագր. շարժման գործիչ, ֆիդայի: Գործել է Սասունի գվո–ում, մասնակցել է Սասունի 1915–ի ինքնապաշտպ–յանը, Մուշում միացել է (1916) *Փեթարա Մանուկի* զինվորներին, արշավել Խութ, Մոտկան, Բոնաշեն (ազատել են 8 հզ. սասունցիների): Մասնակցել է 1921–ի Փետր. հակախորհրդ. ապստամբությանը, որի պարտությունից հետո անցել է արտերկիր:

ՄՈՐՓԵՈՍ, երազատեսության աստվածը հուն. դից–յան մեջ, քնի աստված *Հիպնոսի* որդին: Սովորաբար պատկերվել է թևերով: Փխր. իմաստով՝ «Մորփեոսի գիրկն ընկնել» նշանակում է քնել և երազներ տեսնել:

ՄՈՐՖԻ (Morphy) Պոլ Չառլզ (1837–1884), ամերիկացի շախմատիստ, իրավաբան: 1857–59–ին մի շարք հաղթանակներ է տարել Եվրոպայի ու Ամերիկայի լավագույն շախմատիստների նկատմամբ և ճանաչվել աշխարհի ուժեղագույն շախմատիստ:

ՄՈՐՖԻՆ, ափիոնային *կակաչի* ալկալոիդ: Օգտագործվում է բժշկության մեջ՝ որպես ցավազրկող միջոց:

ՄՈՐՖՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (< հուն. morphe – ձև և *...լոգիա*), **ձևաբանական վերլուծություն**, երկրակեղևի նորագույն շարժումների բնույթը և զարգացման պատմությունը որոշելու մեթոդ, հիմնված է արտածին շարժընթացների և ժամանակակից երկրաձևաբան. կառուցվածքի ուսումնասիրման վրա: Առաջարկել է Վ. *Պևնկը* 1924–ին:

ՄՈՐՖՈՄԵՏՐԻԱ, ձևաչափություն, երկրի մակերևույթի ռելիեֆի քանակ. բնութագիրը: Հիմն. ցուցանիշներն են ռելիեֆի ձևերի թվ. բնութագրերը՝ գծային, մակերեսային և ծավալային, երկրաձևաբան. որոշակի շրջանների բացարձակ և հարաբեր. բարձր–յունները, մասնատման խոր–յունն ու խտ–յունը, նաև գետի ափագծի, հունի գալարումների գործակիցը ևն: Օգտագործվում են կառույցներ, ճանապարհներ նախագծելու, հողի էրոզիայի դեմ պայքարի միջոցներ մշակելու համար:

ՄՈՐՖՈՏՐՈՊԻԱ (< հուն. morphe – ձև և tropos – պտույտ), քիմ. միացությունների բյուրեղ. կառուցվածքի փոփոխություն՝ նրա մոլ–ում ատոմներից մեկը տարրերի պարբեր. համակարգում ըստ խմբի հարևան տարրի ատոմով (օր.՝ քլորը՝ բրոմով) փոխարինելու ժամանակ: Մ. կարելի է հակադրել *իզոմորֆությանը*:

ՄՈՑԱՐՏ (Mozart) Լեոպոլդ (1719–1787), ավստրիացի ջութակահար, կոմպոզիտոր: Վ. Ա. *Մոցարտի* հայրը և ուսուցիչը: Հեղինակ է ջութակի նվագի մեթոդ. ձեռնարկի (1756), մեսաների, կանտատների, օրատորիաների, սիմֆոնիաների, գործիք. կոնցերտների, կամեր–գործիք. և այլ երկերի:

ՄՈՑԱՐՏ Վոլֆգանգ Ամադեուս (1756–1791), ավստրիացի կոմպոզիտոր: Լ. *Մոցարտի* որդին: Վիեննական դասական դպրոցի ներկայացուցիչ: Երաժշտության մեջ օգտագործել է ազգ. տարբեր դպրոցների գեղ. փորձեր ու ավանդույթներ, բարեփոխել օպերայի ձևերը: Հեղինակ է 23 օպերայի («Պոնտոսի արքա Միհրդատ», 1770, «Կարծեցյալ պարտիզպանուհին», 1775, «Առևանգում հարեմից», 1782, «Ֆիգարոյի ամուսնությունը», 1786, «Դոն Ժուան», 1787, «Կախարդական սրինգ», 1791, ևն), 50–ից ավելի սիմֆոնիաների, գործիք. կոնցերտների, մեսսաների, օրատորիաների, «Ռեքվիեմի» (1791, ավարտել է Ֆ. Ք. *Զյուսմայերը*), կամեր–գործիք., դաշնամուր., խմբերգ. երկերի, երգերի ևն:

«ՄՈՑԱՐՏԵՈՒՄ» (Mozarteum), միջազգ. երաժշտաթատեր. և գիտակրթ. կազմ–յուն Զալցբուրգում (հիմն.՝ 1841): 1880–ին միավորվել է միջազգ. մոցարտյան ընկ–յան (հիմն.՝ 1870) հետ: Ներառում է «Մ.» համալսարանը (անվանումը՝ 1998–ից), «Մ.» հիմնադրամը (1931–ից, ընդգրկում է Վ. Ա. Մոցարտի ստեղծագործության ուսումնասիրման կենտր. ինստ–ը, այժմ՝

ակադ.), «Մ.» նվագախումբը: Տեղակայված է տարբեր շենքերում, որոնցից 3-ը Վ. Ա. Մոցարտի տուն-թանգարաններ են:

ՄՈՈՒԽՏ (Mowat) Ֆառլի (1921–2014), կանադացի անգլիագիր գրող: Հեղինակ է կանադացի էսկիմոսների մասին «Եղջերուների երկրի մարդիկ» (1952), «Հուսահատված ժողովուրդ» (1959) վեպերի, բնապահպանության խնդիրներին վերաբերող «Մի՛ բղավիր՝ գայլեր»» (1963) ժող-ի, «Ծովի ողբերգությունները» (1984), «Ջրոսանք երկրում» (2000) և այլ երկերի:

ՄՈՔԱԼԱՔՆԵՐ (վրաց.՝ մոքալաքե-քաղաքացի), քաղաք. բնակչության խավ Վրաստանում: Ձևավորվել է XVII դ-ում, հիմնականում՝ Թիֆլիսում և Գորիում բնակություն հաստատած հայերից: Հետագայում դարձել է մի տեսակ պատվանուն, որը Վրաց թագավորները շնորհել են այն բնակիչներին, որոնք ունեին քաղաքային հին ծագում և վճարում էին հատուկ հարկ՝ մախթա: Վրաստանը Ռուսաստանին միանալուց (1801) հետո Մ-ի խավն աստիճանաբար վերացել է:

ՄՈՖՈԼՈ (Mofolo) Թոմաս (1877–1948), ՀԱՀ-ի գրող: Սուտո լեզվով գրկ-յան հիմնադիր: Հեղինակ է զուլուսների առաջնորդի մասին կրոն. և առասպել. մոտիվներով «Չակա» (1925) պատմավեպի, նաև վիպակների:

ՄՌԱՄՈՇԻ, ճախնամոշի, վարդազգինների ընտանիքի բազմամյա խոտաբույսեր: Աճում է հիմնականում Հս. կիսագնդում՝ տունդրայի մամոռակալած ճահիճներում և անտառ. գոտում: Պտուղներն ուտելի են: Մեղրատու է:

ՄՌԱՎԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Փոքր Կովկասի լ-համակարգում՝ Սևանի լ-շղթայի արլ. շարունակությունը: Երկ.՝ մոտ 70 *կմ*, առլգն բարձր.՝ 3724 *մ* (Արիություն լ.): Լանդշաֆտը լ-մարզագետնային է, լանջերին կան անտառներ, սողանքներ, սողանք. լճեր ևն:

«ՄՌԱՎԻ ՂՈՂԱՆՋՆԵՐ», ԼՂՀ Շահումյանի շրջանի հաս. ամսաթերթ (1993-ից, 2013-ից՝ էլեկտրոն., Երևան): Խմբ-ներ՝ Շահեն Մեղրյան, Դերենիկ Պետրոսյան, Կիմ Ղահրամանյան:

ՄՌԱՎԻՆՍԿԻ Եվգենի Ալեքսանդրովիչ (1903–1988), ռուս դիրիժոր: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1946): ԽՍՀՄ ժող. արտիստ (1954): Սոց. աշխ. հերոս (1973): 1938-ից՝ Լենինգրադի ֆիլհարմոնիայի սիմֆ. նվագախմբի գլխ. դիրիժոր և գեղ. ղեկ.: Նվագախումբը Մ-ի ղեկավարությամբ առաջին անգամ կատարել է Դ. Դ. Շոստակովիչի, Ս. Ս. Պրոկոֆևի, Արամ Խաչատրյանի մի շարք ստեղծագործություններ:

ԽՍՀՄ Պետ. (1946), Լենինյան (1961) մրց-ներ:

ՄՌԱՎՅԱՆ Ասքանազ Հարությունի (1886–1929), պետ. և կուս. գործիչ, հրապարակախոս: 1920-ի նոյեմբ-ին ընտրվել է Հայաստանի հեղկոմի անդամ, 1921–23-ին՝ ՀՍԽՀ արտգործժողկոմ, կառ-յան անունից ստորագրել է ***Կարսի պայմանագիրը*** (1921): 1923–29-ին՝ ՀԽՍՀ լուսժողկոմ և ԺԿԽ նախագահի տեղակալ: Հրատարակվել է Մ-ի «Հոդվածներ և ճառեր» (1961) ժող-ը:

ՄՍԱՃԱՆՃԵՐ, *երկթանիների* կարգի կալիֆորիդներ և սարկոֆագիդների ընտանիքների մի քանի տեսակների ընդհ. անվանումը: Երկ.՝ 6–17 *մմ*: Թրթուրները զարգանում են մսեղենի և ձկնեղենի կամ լեշերի մեջ, երբեմն՝ կենդանու մարմնի վերքերում: Մարդու և կենդանիների որոշ վարակիչ հիվանդությունների հարուցիչների, նաև հելմինթների ձվերի փոխանցողներ են:

ՄՍԵՐՅԱՆ Գրիգոր (1846–1893), խմբ-հրտ., թարգմանիչ, հաս. գործիչ: Մսեր ***Մսերյանի*** եղբորորդին: 1877-ին Զմյուռնիայում հիմնադրել է տպարան, հրատարակել 15 անուն գիրք, այդ թվում՝ իր կազմած «Ընթերցարան» (1878), «Համառօտ դիցաբանութիւն» (1878), «Նոր այբբենարան ֆրանսերէնի» (1880) դասագրքերը: 1880–81-ին՝ ***«Մէղմ օրա»*** հանդեսի հիմնադիր-խմբ.: Թարգմանել և հրատարակել է Ա. Դյումայի, Ա. Աշարի, Ժ. Սանդի, Ր. Ֆեպշրի երկերից, Ջ. Բոկաչչոյի «Տասնօրեակը» (հ. 1–2, 1878) ևն:

ՄՍԵՐՅԱՆ Զարմայր Մսերի (1836–1889), հրապարակագիր, խմբ-հրտ.: Մսեր ***Մսերյանի*** որդին, Լևոն ***Մսերյանի*** հայրը: Հոր հետ 1858–62-ին խմբագրել է «Ճռոաքաղ», 1861–64-ին՝ «Համբաւաբեր Ռուսիոյ» հանդեսները: 1872–76-ին՝ «Փարոս» տրեգրքի, 1879–81-ին՝ «Փարոս Հայաստանի» (մոր՝ Սոփիա Մսերյանի հետ) հանդեսի խմբ-հրտ.: 1874-ին Մոսկվայում հիմնադրել է տպարան (5 անուն գիրք): Թարգմ-յուններ է արել ռուս-ից, ֆրանս-ից, անգլ-ից, գերմ-ից:

ՄՍԵՐՅԱՆ Լևոն Զարմայրի (1867–1933), լեզվաբան, հնագետ, պատմաբան: Բանասիր. գիտ. դ-ր (1901), պրոֆ. (1905): Զարմայր ***Մսերյանի*** որդին: Մոսկվայի կերպարվ-ի թանգարանի հիմնադիրներից (գիտքարտուղար): Մոսկվայի հնագիտ. ընկ-յան անդամ: Հեղինակ է «Հայ բարբառագիտության ուսումնասիրություններ» (ռուս., հ. 1, 2, 1897, 1901), «Հայերէն բարբառախօսութիւն» (թարգմ. ռուս-ից, 1899) աշխ-ների:

ՄՍԵՐՅԱՆ Մսեր Գրիգորի (1808–1873), մատենագիր, մշակութ. գործիչ: Գրիգոր ***Մսերյանի*** հորեղբայրը, Զարմայր ***Մսերյանի*** հայրը: 1825-ին տեղափոխվել է Էջմիածին, եղել կաթողիկոսի ատենադպիրը: Հեղինակ է «Յիշատակարան կենաց եւ գործոց մեծանուն պաեազատաց Լազարեան տոհմի» (1856) և այլ աշխ-ների, «Հրահանգ քրիստոնէական հաւատոյ» (1850), «Մանր ուսմունք ազգային եկեղեցական պատմութեան...» (1874) դասագրքերի, «Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի ի Սիմէօնէ մինչ գՅոհաննէս» (1876) մատենագր. երկի և այլ գործերի:

ՄՍԸՐԼՅԱՆ Զավեն Մկրտչի (ծ. 1938), պատմաբան: ՀՀ ԳԱԱ պատվ. դ-ր, արտ. անդամ (2014): Բեյրութի Հայ ավետարան. քոլեջի տնօրեն (1967-ից): Հեղինակ է «Հայկական հարցի մասին» (1978), «Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկուայի եւ Կարսի դաշնագիրերը. 1920–1921 թթ.)» (1979), «Մկրտիչ Մսըրլեանի ազգային-քաղաքական գործունեութիւնը» (1981), «Համաշխարհային երկրորդ պատերազմին վախճանը եւ հայերը» (1993) և այլ երկերի:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ, ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշան:

ՄՍՏԻՍԼԱՎԵՑ Պյոտր Տիմոֆեևիչ (ծ. թ. անհտ–1577-ից հետո), բելոռուս տպագրիչ: ***Իվան Ֆեոդորովի*** օգնականը: 1564-ին Մոսկվայում լույս են ընծայել ռուս. 1-ին տպագիր գիրքը՝ «Առաքյալը» («Апостоль»): 1570-ական թթ-ի սկզբից գործել է Վիլնյուում (Վիլնյուս):

ՄՄԼՅԱՆ Երվանդ Համբիկի (1886–1971), հրտ., խմբ.: 1908-ին Կ. Պոլսում հիմնադրել է «Գուտենբերգ», 1917-ին Կահիրեում՝ «Ոսկետառ» (շուրջ 70 անուն գիրք) տպարանները: 1919–71-ին՝ ***«Սաւառնակ»*** երգիծ. շաբաթաթերթի հիմնադիր և ցկյանս խմբ.:

ՄՄՐՅԱՆ Ժասմեն Իվանի (Հովհաննեսի, 1932–2008), դերասանուհի: ՀՀ վաստ. արտիստ (1987): Վլադիմիր ***Մսրյանի*** քույրը: 1960–68-ին՝ ՊՀԹ, 1969-ից՝ ԵԴԹ դերասանուհի: ՀԽՍՀ Պետ. մրց. (1983, Արուս՝ «Աշնան արև»՝ ըստ Հրանտ Մաթևոսյանի):

ՄՄՐՅԱՆ Հովհաննես (1888–1965), բանասեր, պատմաբան: 1921-ին ձեռնադրվել է քհն.: Ֆրանսիայի Լիոնի նհնգ-ի Հիսուսյան միաբանության անդամ (1911): Հեղինակ է «Հայկական եկեղեցիների պատմությունն ու վերականգնումը» (1965), նաև իրավագիտ-յանը, մանրանկարչությանը, ճարտ-յանը, Ներսես Լամբրոնացուն, Գրիգոր Նարեկացուն (նրանց գործերից թարգմանել է ֆրանս.) վերաբերող աշխ-ների:

ՄՄՐՅԱՆ Վլադիմիր Իվանի (Հովհաննեսի, 1936–2010), դերասան: ՀՀ ժող. արտիստ (1987): 1961–67-ին՝ ԵՌԹ, 1967-ից՝ ԵԴԹ դերասան (Կլարենս՝ Վ. Շեքսպիրի «Ռիչարդ III», Հերոստրատ՝ Գ. Գորինի «Մռնանալ Հերոստրատին», Միհրդատ Պոնտացի՝ Պ. Զեյթունցյանի «Աստվածների կանչը», Բեն Ալեքսանդր՝ Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է», ևն): Խաղացել է հեռուստաբեմադրություններում (Ա. Պ. Չեխովի «Քեռի Վանյա» ևն), նկարահանվել կինոյում («Զայն բարբառոյ...», 1991, «Լռության սիմֆոնիա», 2000, երկուսն էլ՝ Հայֆիլմ, «Պագանինի»՝ Պագանինիի դերում, 1981, Բուլղարֆիլմ–Մոսֆիլմ, «Պետահողմ», 1968, Տաջիկֆիլմ, ևն):

ՀՀ Պետ. (1981), ՀԹԳՄ «Արտավազդ» (2005) մրց-ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (1998):

ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ, մարդկային ճանաչողության բարձրագույն աստիճանը, որը հնարավորություն է ընձեռում ձեռք բերելու գիտելիքներ այնպիսի օբյեկտների, իրականության հատկությունների և հարաբերությունների մասին, որոնք անմիջականորեն չեն ընկալվում զգայական իմացությամբ: Մ-յան ձևերն ու օրենքներն ուսումնասիրում է տրամաբ-յունը, ընթացքը՝ հոգեբ-յունն ու նյարդաֆիզիոլոգիան, կիբեռնետիկան Մ. վերլուծում է մտածական որոշ գործառույթների մոդելավորման խնդիրների համատեքստում:

ՄՏԱՀԱՆԳՈՒՄ, մտավոր գործողություն, որի հիմքում անհատ. գիտակցության դրույթների նորմերն են, ավանդ. տրամաբ-յան մեջ՝ մտածողության ձևերից և կառուցվածքային աստիճաններից: Մ. տրված մեկ կամ ավելի որոշակիորեն կապված դատողություններից (նախադրյալներ) նոր դատողություն (եզրակացություն) բխեցնելն է, առկա գիտելիքներից նոր գիտելիքներ ստանալու տրամաբ. եղանակը:

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, ստեղծվել է 2002-ին՝ ՀՀ Կառ-յանն առընթեր արտոնագրային վարչության և հեղինակային իրավունքի ազգ. գործակալության միավորմամբ: Հայ. և ռուս. հրատարակում է «Արդյունաբերական սեփականություն» պաշտոն. տեղեկագիրը՝ արտոնագրված գյուտերի և օգտ. մոդելների լրիվ նկարագրությամբ:

ՀՀ-ն 1993-ից՝ Մտավոր սեփականության համաշխ. կազմ-յան (WIPO), 1995-ից Եվրասիական արտոնագրային կազմ-յան (EANO) անդամ է:

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ներառում է գր., գեղ. և գիտ. ստեղծագործություններին, դերասանների կատարող. արվ-ին, ձայնագրությանը, ռադիո- և հեռուստահաղորդումներին (հեղինակ. իրավունք), գիտ. հայտնագործություններին, գյուտերին վերաբերող իրավունքները, որոնք առնչվում են արդ. սեփականության տարբեր տեսակներին, ինչպես նաև անբարեխիղճ մրցակցությունից պաշտպ-յանը: 1967-ին ստորագրվել է Մ. ս-յան համաշխ. կազմ-յան հիմնադրման մասին միջազգ. համաձայնագիրը:

ՀՀ-ում Մ. ս-յան պահպանության ազգ. համակարգը ձևավորվել է 1992-ին՝ ՀՀ Կառ-յանն առընթեր արտոնագր. վարչության և 1993-ին Հեղինակ. իրավունքի ազգ. գործակալության ստեղծմամբ, որոնք 2002-ին միավորվել են որպես *Մտավոր սեփականության գործակալություն*:

ՄՏԱՎԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, զուտ մտավոր աշխ-ով զբաղվող հաս. խավ, որը նպաստում է գիտ-յան և մշակույթի զարգացմանը: Հասկացությանը հաճախ տրվում է նաև բարոյական իմաստ՝ Մ-յանը հաստատելով բարձր բարոյականության ու ժողովրդավարության արժեքների կրող:

ՄՏԵՐԱԿԱՆՑ ՍԱՐԴԵՐ, **ֆրիններ**, *ատղակերպների* կարգ: Երկ.՝ մինչև 45 *մմ*: Հայտնի է մոտ 770 տեսակ՝ խոնավ արևադարձ. անտառներում: Մսվում են միջատներով:

ՄՏԵՐԱԿԱՎՈՐՆԵՐ (Mastigophora կամ Plagellata), *նախակենդանիների* դաս (կամ ենթատիպ): Շարժվում են մտրակիկների օգնությամբ: Չափերը՝ 2–5 *մկմ*-ից մինչ 1 *մմ*: Հայտնի է 2 ենթադաս՝ բուս. (քլամիդոմոնադներ, էվգլենայիններ, զրահակիրներ) և կենդ. (տրիպանոսոմներ, լեյշմանիաներ, լյամբլիաներ): Հայտնի է ավելի քան 7 հզ. տեսակ. ազատ ապրողներ (ծով. և քաղցրահամ ջրերում և հողում), պլանկտոնային ձևեր, կարևոր նշանակություն ունեն նյութերի շրջապտույտում: Մի շարք տեսակներ ջրի աղտոտվածության ցուցիչներ են:

ՄՏԵՐԱԿԻԿՆԵՐ, բջիջների թելանման բջջապլազմային շարժուն ելուստներ, որոնք բնորոշ են շատ բակտերիաների, բոլոր մտրակակիրներին, զոոսպորներին և կենդանիների ու բույսերի սերմնաբջիջներին: Ծառայում են հեղուկ միջավայրում տեղաշարժվելուն:

ՄՐԵՆ, ավան Այրարատ նհնգ-ի *Շիրակ* գվո-ում՝ Ախուրյանի աջ ափին (այժմ՝ Թուրքիայի տարածքում): Հիշատակվում է V դ-ից. մինչև դարավերջը պատկանել է Կամսարականներին, հետագայում՝ Բագրատունիներին, Զաքարյաններին: Ներկայում ամայի է, ավերակ: Հայտնի է *Մրենի կաթողիկե եկեղեցին*:

ՄՐԵՆԻ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ, ճարտ. հուշարձան Այրարատ նհնգ-ի Շիրակ գվո-ում՝ Ախուրյան գետի ափին: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ կառուցվել է 613-ին (ըստ շին. արձանագրության՝ ավարտվել է 689-ին, կառուցող՝ Դավիթ Սահառունի): Մ. կ. ե. քառամույթ գմբեթավոր, հնգանիստ խորանով՝ 2 կողմերում խաչվող թաղերով ծածկված ավանդատներով հորինվածք է: Պահպանվել է գմբեթի նախն. կղմինդրե տանիքը: Պատկերաքանդակները գեղ. բարձր արժեք ունեն վաղմիջնադար. հայկ. արվ-ում: Եկեղեցին այժմ կիսավեր է, 1964-ին քանդվել է հվ-արմ. անկյունը:

ՄՐԻԿ, բույսերի հիվանդություն: Հարուցիչը Basidiomycetes դասի ustilaginales մրիկասնկերն են: Հատկապես մեծ վնաս են հասցնում հացազգիներին: Տարածված է ամենուրեք: Հատկապես վտանգավոր և հաճախ հանդիպող Մ-ներից են ցորենի և աշորայի կարծրամրիկը, գարու քարամրիկը, վարսակի կարծրամրիկը են:

ՄՐԻԿԱՄԱՆԿԵՐ (Ustilaginales), *բազիդիավոր անկերի* կարգ: Հայտնի է մոտ 1200 տեսակ, ՀՀ-ում՝ 10՝ ցորենի, վարսակի, ցորենի փոշելվիկներ, քարամրիկ են: Բարձրակարգ, հատկապես հացահատիկ. բույսերի մակաբույծներ են, առաջացնում են *մրիկ* հիվանդությունը: Սպորատվության շրջանում անկամարմինը մասնատվում է մուգ սպորների (տելիոսպորներ), որի հետևանքով բույսի ախտահարված մասն ստանում է «այրվածի» տեսք (այստեղից՝ անվանումը):

ՄՐՃԱԳԼՈՒԽ (Scopus umfretta), **ստվերային թռչուններ**, *արագիլանմանների* կարգի թռչուն: Երկ.՝ մինչև 60 *սմ*: Ծոծրակին ունի երկար փետուրներից կազմված փունջ, գլուխը մուրճ է հիշեցնում (այստեղից՝ անվանումը): Ապրում է Աֆրիկայում, Մադագասկար կղզում:

ՄՐՃԱԳԼՈՒԽ ՇՆԱՉԿՆԵՐ (Sphyrniade), մուրճ-ձկներ, շնաձկների ընտանիք: Երկ.՝ մինչև 6 *մ*, կ. զ.՝ մինչև 60 *կգ*: Գլուխը տափակած է, ձևով՝ մուրճ հիշեցնող: Հայտնի է 7 տեսակ՝ արևադարձ. և մերձարևադարձ. օվկիանոս. ջրերում: 1 տեսակ հանդիպում է Ճապոն. ծովում: Սարդու համար վտանգավոր է:

ՄՐՄՐՅԱՆ (Մըրմըրյան) Հարություն Գևորգի (1860–1926), գրող, պատմաբան, թարգմանիչ: Հեղինակ է «Հին օրեր ու այդ օրերուն հայ մեծատունները: 1550–1870» (1901), «Ստուերք հին դէմքերու. 1635–1900» (1907), «Թուրքահայոց հին վաճառականութիւնն եւ վաճառականք: 1740–1890» (1908), «Պատմութիւն հայ գրականութեան» (մաս 1, 1910) և այլ աշխ-ների: Թարգմանել է Հերոդոտոսի, Ճ. Մինտեսքյոյի, Ժ-Ժ. Ռուսոյի, Հ. Տենի, Հ. Սպենսերի և ուր. գործերից:

ՄՐՈՁԵԿ (Mrożek) Սլավոմիր (1930–2013), լեհ գրող: 1968-ից՝ վտարանդի: Հեղինակ է «Ոստիկանություն» (1958), «Հնդկահավ» (1960), «Մերկապար» (1961), «Տանգո» (1965), «Տարագիրներ» (1974), «Դեսպան» (1982), «Պայմանագիր» (1986), «Դիմանկար» (1987), «Հրաշալի տեսարան» (1998) գրոտեսկաերգիծ. պիեսների:

ՄՐՋՅՈՒՆՆԵՐ (Formicidae), խայթող *թաղանթաթևավորների* կարգի միջատների ընտանիք: Առաջացնում են բարդ ընտանիքներ, որոնք ընդգրկում են տարբեր ֆունկցիաների մի քանի կաստաներ (աշխատավորներ, զինվորներ են): Աշխատավոր Մ-ի երկ.՝ 0,8–30 *մմ*, էգերինը ավելի երկար է: Հայտնի են մոտ 14 հզ. տեսակ: ՀՀ-ում հանդիպում է 116 տեսակ: Առավել տարածված են թափառող, ճահճային, խցանագլուխ Մ., դեղին լագիուսը և այլ տեսակներ: Բները կառուցում են հողում, բնափայտում, երբեմն վերգետնյա կառույցներ են (մրջնանոցներ), գոյություն ունեն նաև մշտ. բույն չունեցող թափառող տեսակներ:

ՄՐՋՆԱԹԹՈՒ, HCOOH, պարզագույն միահիմն կարբոնաթթու: Սուր հոտով անգույն հեղուկ է, $t_{ևռ.}$՝ 100,8°C: Ամենաուժեղ կարբոնաթթուն է: Մ-ի աղերը և էսթերները կոչվում են **ֆորմիատներ:** Վերականգնիչ է, տալիս է «արծաթահայելու» ռեակցիա: Հայտնաբերվել է մրջյունների արտաթորանքում, պարունակվում է եղևնու ասեղնատերևներում, եղինջում, մրգերում: Ստանում են մեթանի կատալիտիկ օքսիդացումով, H_2O+CO սինթեզով և հիմնականում NaOH-ի և CO-ի փոխազդեցությամբ (120–150°C, 6–8 մթն. ճնշման պայմաններում): Մ. կիրառվում է օրգ. սինթեզում, արծնային ներկման, կաշվի վերամշակման, մրգահյութերի պահածոյացման համար:

ՄՐՋՆԱԼԴԵՀԻԴ, **ֆորմալդեհիդ, մեթանալ**, CH_2O, պարզագույն ալդեհիդ: Սուր, գրգռող հոտով, անգույն, թունավոր գազ է: Ուժեղ վերականգնիչ է, տալիս է «արծաթահայելու» ռեակցիա: Ջր. լուծույթներում պոլիմերվում է դանդաղ և առաջացնում եռօքսան և պարամրջնալդեհիդ: Մ. ամոնիակի հետ առաջացնում է ուրոտրոպին, միզանյութի հետ՝ միզանյութմրջնալդեհիդային, ֆենոլի հետ՝ ֆենոլմրջնալդեհիդային խեժեր ևն: Օգտագործվում է նաև պոլիվինիլացետալներ, իզոպրեն, դեղանյութեր, ներկանյութեր ստանալու, կաշին դարաղելու համար: Մ-ի 37–40 %-անոց ջր. լուծույթը *ֆորմալինն* է:

ՄՐՋՆԱԿԵՐՆԵՐ (Myrmecophagidae), *թևերպատնավորների* կարգի կաթնասունների ընտանիք: Մարմնի երկ.՝ մինչև 1,2, պոչինը՝ մինչև 0,9 *մ*: Հայտնի է 3 տեսակ՝ Ամերիկայի արևադարձ. անտառներում և թփուտային սավաննաներում: Մսվում են հիմնականում մրջյուններով և տերմիտներով, որոնց հավաքում են երկար, կպչուն լեզվի օգնությամբ: Հսկա Մ. գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՄՐՋՆԱՈՅՈՒԽՆԵՐ, *ցանցաթևավորների* կարգի միջատների ընտանիք: Նման են *ճպուռներին*: Երկ.՝ 2–7,5, թևերի բացվածքը՝ 2–17 *սմ*: Հայտնի է մոտ 2000 տեսակ՝ առավելապես արևադարձներում: Թրթուրները գիշատիչներ են, որսում են մանր միջատներ, հաճախ՝ մրջյուններ (այստեղից՝ անվանումը):

ՄՐՎԱՆՅԱՆՆԵՐ, **Մրվանիներ**, քրդ. ծագումով ամիրայական տոհմ Հայաստանում X–XI դդ-ում: Իշխել են *Աղձնիքում* և Խլաթում: XI դ-ի վերջին Մ-ի տիրույթները զավթել են սելջուկ-թուրքերը:

ՄՐՏԱՎԱՐԴ (Rhododendron), **լեռնավարդ, վարդածառ**, հավամրգազգիների ընտանիքի մշտադալար, հազվադեպ՝ տերևաթափ թփերի, երբեմն՝ փոքր ծառերի ցեղ: Հայտնի է 600 (1000) տեսակ՝ հս. կիսագնդի բարեխառն գոտում, ՀՀ-ում՝ 1՝ Մ. կովկաս. (գրանցված է ՀՀ Կարմիր գրքում)՝ Շիրակի, Լոռու, Տավուշի մարզերում: Մ-ի 8 տեսակ պահպանվում է:

ՄՐՏԻՄՆԵՐ, *բաղերի* ընտանիքի գետային մանր ջրլող թռչունների ցեղ: Հայտնի է շուրջ 20 տեսակ, ՀՀ-ում 3՝ սուլող, ճըճքան, մարմարե Մ.: Արդյունագործ. թռչուն է: Մարմարե Մ. գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՄՐՐԿԱՀԱՎԵՐ (Procellaridae), խողովակաքթերի կարգի օվկիանոս. թռչունների ընտանիք: Հայտնի է 4 ընտանիքի (ալբատրոսներ կամ ջրխոխաններ, իսկական մրրկահավեր, որոներ, սուզվող Մ.) 95 տեսակ՝ առավելապես Հվ. կիսագնդում:

Լավ թռչում են, բազմացման շրջանում կապված են ցամաքի հետ, բնադրում են գաղութներով: 12 տեսակ և 8 ենթատեսակ գրանցված են ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՄՐՐԿԱՅԻՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ, Ֆուկոյի հոսանքներ, փակ ինդուկցիոն հոսանքներ զանգվածեղ հաղորդիչներում, որոնք առաջանում են փոփոխ. մագնիս. դաշտով մակածված մրրկային էլ. դաշտի ազդեցությամբ: Մ. հ. հանգեցնում են էլեկտրաէներգիայի կորստի, որը տաքացնում է հաղորդիչը (որում ծագել են Մ. հ.): Այդ կորուստները փոքրացնելու համար փոփոխ. հոսանքի մեքենաների և սարքերի մագնիսալարերը պատրաստում են մեկուսացված մետաղաթիթեղներից:

ՄՐՅԱԿՅՈՒՆՅՈՒՆ, 1. (կենսբ.) ակտիվ մրցակց. փոխհարաբերություն նույն կամ տարբեր տեսակների անհատների միջև՝ գոյության միջոցների և զարգացման պայմանների համար: 2. Ձեռնարկատիր. գործունեության մեջ լավագույն արդյունքների հասնելու՝ ապրանք արտադրողների, ձեռն-ների ու ֆիրմաների ազատ պայքարի մշտապես գործող մեխանիզմ: Տարբերում են ներքյուղ. (նույն պահանջմունքը բավարարող, սակայն որակով, տեսականիով ու գնով տարբերվող ապրանքներ արտադրողների պայքար նույն ճյուղի ներսում) և միջճյուղ. (սպառող. ու արտադր. բնույթի տարբեր պահանջմունքներ բավարարող տարբեր ճյուղերում ապրանքներ արտադրողների միջև): Ըստ իրականացման եղանակի՝ Մ. լինում է գնային, երբ ապրանքների ու ծառայությունների վաճառքը կատարվում է մրցակցից ավելի ցածր գներով, և ոչ գնային, երբ առաջարկվում են առավել որակյալ, հուսալի ու ծառայության ժամկետի ապրանքներ: Ներկայում մեծ նշանակություն են ստանում ապրանք արտադրողների և ծառայությունների մատուցողների հուսալիությունը, հեղինակությունն ու համբավը:

ՄՅԼԵԹ, ք. Վրաստանում՝ Արագվի և Կուր գետերի միախառնման տեղում: Նցխեթ–Մթիանեթի երկրամասի վարչ. կենտրոնը: Բն.՝ 10,0 հզ. (2014): Մինչև 1989–ը՝ վրաց պատրիարքարանի նստավայրը: Գործում է արգելոց–թանգարան: Եղել է Իբերիայի մայրաքաղաքը մ.թ.ա. III դ–ից մինչև մ. թ. VI դ.: Պահպանվել են Արմազի (Արմազցիխե) բերդի պարսպապատ բնակավայրերի, քաղաք. թաղամասերի մնացորդներ, գերեզմանատներ, Սամթավրո վան. համալիրը (VI դ.) և Սվետիցխովելի մայր տաճարը: Մերձակայքում է Ձվարիի (VI դ.) վանքը: Մ–ի պատմաճարտ. հուշարձանները Համաշխ. մշակույթի ժառանգության ցանկում են:

ՄՈԻԱՍԱՆ (Moissan) Անրի (1852–1907), ֆրանսիացի քիմիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. անդամ (1904): Պլավիկյան թթվի էլեկտրոլիզով ստացել է ազատ ֆտոր (1886): Իր ստեղծած (1892) էլեկտրաաղեղ. վառարանով ստացել է որոշ մետաղների կարբիդներ, բորիդներ, սիլիցիդներ, հիդրիդներ: Նորելյան մրց. (1906):

ՄՈՒԱՎԻԱ I, *Մուավիա իբն Աբու Սուֆյան* (603–680), *Օմայանների* հարստության հիմնադիրը և 1–ին խալիֆը (661–ից): 656–ից պայքարել է Ալի խալիֆի դեմ և գրավել գահը: Խալիֆության մայրաքաղաք է հռչակել Դամասկոսը, խալիֆայի իշխանությունը դարձրել ժառանգ.: Մ. I–ի՝ Ասորիքի կուսակալ եղած ժամանակ (639–ից) արաբները երկու անգամ (640, 654) արշավել են Հայաստան: 652–ին Մ. I և Հայոց իշխան *Թեոդորոս Ռշտունին* կնքել են պայմանագիր (տես *Հայ–արաբական պայմանագիր 652*):

ՄՈՒԱՎՐ (Moivre) Աբրահամ դը (1667–1754), անգլիացի մաթեմատիկոս (ծագումով՝ ֆրանսիացի): Ստացել է (1707) կոմպլեքս թիվը n աստիճան բարձրացնելու **Մուավրի բանաձևը**: Ապացուցել է (1733) պատահույթի տեղի ունենալու հավանականությունների m թվի բաշխման թեորեմը n անկախ փորձարկումների դեպքում, որը վերահայտնաբերել է Պ. *Լապլասը* (1812):

ՄՈՒԽԱՐՅԱՆՈՎ Արսլան Կոտլիահմետովի (1908–1975), բաշկիր դերասան, ռեժ., դրամատուրգ: ՌԽՖՍՀ (1949), ԽՍՀՄ (1955) ժող. արտիստ: 1928–ից (ընդհատումներով) Բաշկիր. դրամայի թատրոնի (Ուֆա) դերասան (1951–54–ին՝ գլխ. ռեժ.): Դերերից են՝ Օթելլո (Վ. Շեքսպիրի «Օթելլո»), Պրոտասով (Լ. Ն. Տոլստոյի «Կենդանի դիակ») ևն: Նկարահանվել է կինոյում («Սալավաթ Յուլաև»): Բաշկիր. ԽԽՍՀ Պետ. մրց. (1980):

ՄՈՒԲԵՐԳ (Moberg) Վիլհելմ (1898–1973), շվեդ գրող: Հեղինակ է «Կնուտ Տուրինգ» (1935–39) ինքնակենսագր. եռերգության, «Գիշերային սուրհանդակ» (1941) պատմավեպի, «Կոտրված հրացանով զինվորը» (1944) և այլ վեպերի, XIX դ–ում (1949–59) Ամերիկա արտագաղթած շվեդների մասին քաոերգության, սոցիալ. թեմաներով դրամաների:

ՄՈՒԴ, **Մութ**, բք Լեռն. Կիլիկիայում՝ Կալիկանդոս (Սելևկիա) գետի Կիրամա վտակի հովտում: Եղել է նույնանուն գվո–ի կենտրոնը և անկախություն պահպանել մինչև 1382–ը: XVI դ–ից նվաճել են օսմ. թուրքերը: XIX դ–ի վերջին և XX դ–ի սկզբին ավանը համանուն գվոկ–ի կենտրոնն էր և ուներ շուրջ 1500 բն. (հիմնականում՝ հայ):

ՄՈՒԴԱՆԻԱՅԻ ԶԻՆԱԴԱԴԱՐ 1922, ավարտել է 1919–22–ի *հույն–թուրքական պատերազմը*: Ստորագրվել է հոկտ. 11–ին Մուդանիա (Թուրքիա) ք–ում՝ Թուրքիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի միջև, որին հոկտ. 13–ին միացել է Հունաստանը: Դադարեցվել են ռազմ. գործողությունները, հուն. զորքերը տարհանվել են Արլ. Թրակիայից:

ՄՈՒԴՐՈՍԻ ԶԻՆԱԴԱԴԱՐ 1918, ստորագրվել է Մեծ Բրիտանիայի և Թուրքիայի միջև հոկտ. 30–ին Մուդրոս նվիճգստում (Էգեյան ծովի Լեմնոս կղզի)՝ ԱՀՊ–ում Թուրքիայի պարտությունից հետո: Ուներ նաև Հայաստանի շահերն անմիջականորեն շոշափող հոդվածներ: 1922–ի հոկտ. 11–ին կնքված *Մուդանիայի զինադադարով* Մ. զ. կորցրել է իր ուժը:

ՄՈՒԴՐՈՎ, Սատվեյ Յակովլևիչ (1776–1831), ռուս. թերապիայի և ռազմ. հիգիենայի, կանխարգելիչ ուղղության հիմնադիրներից: Աշակել է հիվանդի հետազոտման սխեմա: Գործն. բժշկության մեջ առաջինն է ներդրել հիվանդության պատմության կազմումը: Խոլերայի դեմ պայքարի կենտր. հանձնաժողովի անդամ (1830–31): Մահացել է խոլերայի համաճարակի դեմ պայքարի ժամանակ վարակվելով:

ՄՈՒԶԻԼ (Musil) Ռոբերտ (1880–1942), ավստրիացի գրող: 1938–ից՝ Շվեյցարիայում: «Մարդն առանց հատկությունների» (հ. 1–3, 1930–43, հայ.՝ 2003, անավարտ) վեպը XX դ–ի եվրոպ. մտքի տարբեր դպրոցների ինքնատիպ հանրագիտարան է: Հեղինակ է նաև «Երեք կին» (1924, հայ.՝ 1994) նովելների և էսսեների, «Ճշգրտություն և հոգի» (հայ.՝ 2004) ժող–ների, «Դպրոցահասակ Թյորլեսի հոգեխռովքը» (հայ.՝ 2010) վեպի:

ՄՈՒԶՐՈՒԿՈՎ Բորիս Գլեբովիչ (1904–1979), խորհրդ. ճարտարագիտ. տանկային ծառայության գեն–մայոր (1945): Սոց. աշխ. հերոս (1943, 1949): Նպաստել է ռուս. պաշտպ. արդ–յան կազմակերպմանը և նոր ռազմ. տեխնիկայի ստեղծմանը:

ԽՍՀՄ Պետ. (1951, 1953), Լենինյան (1962) մրց–ներ:

ՄՈՒԹԱԶԻԼԻՏՆԵՐ (արաբ.՝ մութազիլա – մեկուսացվածներ), ղալամի առաջին դպրոցը, որի ներկայացուցիչները փորձել են հիմնավորել մահմեդ. դավանանքը տրամաբ–փիլ. դրույթներով: Հիմնադիրներն են Վասիլ իբն Աթան և Ամր իբն Ուբայդը (երկուսն էլ՝ VIII դ.): Ուսմունքն ավարտուն տեսք է ստացել IX–X դդ–ում, առանձին դպրոցներ գոյատևել են մինչև XII դ.:

ՄՈՒԹԱՖՅԱՆ Արմեն (Կլոդ) Զարեհի (ծ. 1942), մաթեմատիկոս, պատմաբան, արվեստաբան: Մաթ. գիտ. թեկնածու (1965), պատմ. գիտ. դ–ր (2002), ԵՊՀ պատվ. դ–ր (1995): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (1994): Զարեհ *Մութաֆյանի* որդին: Աշխ–ները վերաբերում են Գալուայի տեսության, մասնավորապես՝ գծային հանրահաշվի հարցերին, պատմագիտ. ուսումնասիրությունները՝ Հայաստանի ու Կիլիկիայի հայկ. պետության պատմությանն ու մշակույթին, երկրաքաղ. և դիվանագիտ. հարցերին, Արցախի պատմությանը:

ՄՈՒԹԱՖՅԱՆ Զարեհ Կարապետի (1907–1980), նկարիչ: Արմեն *Մութաֆյանի* հայրը: Հեղինակ է գեղանկարչ. գործերի («Զարդը», «Մահ և կյանք», «Հայ մամիկը», «Արշակ Չոպանյան» ևն), հայաստանյան պատկերների շարքի («Տաթև», «Արարատ և Արաքս», «Էջմիածին» ևն), «Հայերգութիւն վրձինով եւ գրչով» (ֆրանս., հայ., 1982), «Նկարչութեան դասական դպրոցները և արդի ձգտումները» (1982) աշխ–ների:

ՄՈՒԹԱՖՅԱՆ Լևոն Գրիգորի (1954–2015), թատերագետ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2007): 1997–2001–ին՝ ԵԹԿՊԻ Գյումրիի մասնաճյուղի տնօրեն: Հեղինակ է «Սայիս Ռաֆայելյան» (1993), «Արման Վարդանյանի աշխարհը» (2000), «Պիտեր Բրուկ» (2003), «Հրաչյա Ղափլանյան» (2003), «Արման Խանդիկյանի թատրոնը» (2006), «Հարյուր տարի և կես դար» (2015) աշխ–ների, «Ուրախ ճամփորդություն», «Մենանվագ հոգու համար» պիեսների:

ՀԹԳՄ ոսկե մեդալ (2015):

ՄՈՒԼԱՏ (իսպ.՝ mulato), խառը ռասա. սևամորթի և եվրոպեոիդ ռասայի ներկայացուցիչների ամուսնությունից ծնվածները:

ՄՈՒԼԻՍ (Mullis) Քերի (ծ. 1944), ամերիկացի կենսաքիմիկոս: Աշակել է պոլիմերազային շղթ. ռեակցիայի մեթոդը (ՊՆԹ–ի պատճենների անսահմանափակ թվի ստացումը՝ ՊՆԹ–պոլիմերազ ֆերմենտի օգնությամբ), որը լայնորեն կիրառվում է մոլ. կենսբ–յան և բժշկության մեջ:

Նորելյան մրց. (1993, Մ. *Սմիթի* հետ):

ՄՈՒԼԻՍ [Շոտլանդիայի Մալ (Mull) կղզու անունով], միներալ սիլիկատների դասից:

Քիմ. կազմը՝ $Al_6Si_2O_{13}$: Հանդիպում է մանր պրիզմանների ձևով: Անգույն է: Կարծր.՝ 6–7, խտ.՝ 3,1–3,2 *գ/սմ*³: Հալվում է մոտ 181ºC-ում: Մ. մի շարք արհեստ., տեխ. նյութերի կարևոր բաղադրիչ է: Ստացվում է էլ. վառարաններում՝ բոքսիտի, կավահողի, կաոլինի, կոքսի խառնուրդի հալումով:

ՄՈՒԼՉԱՅՈՒՄ (անգլ.՝ mulch – ծղոտով, գոմաղբով ծածկել), ագրոտեխ. գործադրաձև՝ հողի համատարած կամ միջշարքերի ծածկումը մուլչերով՝ հողի խոնավությունը պահպանելու նպատակով: Որպես մուլչ՝ օգտագործում են տորֆի մանրուք, մանրացրած հարդ, փայտաթեփ, թափված տերևներ ևն: Կիրառում են բանջար., պտղատու, հատապտղատու, գեղազարդիչ և այլ բույսերի աճեցման ժամանակ:

ՄՈՒԼՉԵՐ (Multscher) Հանս (մոտ 1400–1467), գերմանացի քանդ., գեղանկարիչ: Կրոն. թեմաներով կոմպոզիցիաներում ներմուծել է կենցաղ. մոտիվներ, կերպարներին հաղորդել սուր անհատ. նկարագիր («Լանդսբերգյան խորան», 1437):

ՄՈՒԼՏԱՏՈՒԼԻ (Multatuli, Էդուարդ Դաուես Դեքեր, 1820–1887), նիդեռլանդացի գրող: Հայտնի է «Մաքս Հավելաար կամ Նիդեռլանդական առևտրական ընկերության սուրճի աճուրդները» (1859, հայ.՝ 1956) վեպը: Հեղինակ է նաև «Սիրային նամակներ» (1861) կենսագր. վեպի, «Գաղափարներ» (հ. 1–7, 1862–77) երկի և այլ գործերի: Հայ. հրատարակվել է նաև «Սայիդ և Ադինդա» (1926) պատմվածքը:

ՄՈՒԼՏԻ... (լատ.՝ multum – շատ), բարդ բառերի մաս. ցույց է տալիս բազմակիություն, շատություն (օր.՝ ***մուլտիպոլ, մուլտիվիբրատոր***):

ՄՈՒԼՏԻՊԼԵՏՈՒԹՅՈՒՆ (լատ.՝ multiplex – բազմակի, բազմապատիկ), ատոմի կամ մոլ-ի սպինի տարածության մեջ հնարավոր դիրքորոշումների թիվը: Մ. որոշում է այն ենթամակարդակների թիվը, որոնք առաջանում են սպին-ուղեծր. փոխազդեցության հետևանքով էներգիայի մակարդակի ճեղքումից: Նույն սպինն ունեցող տարր. մասնիկների խմբերը (դուպլետներ, տրիպլետներ ևն) կոչվում են մուլտիպլետներ:

ՄՈՒԼՏԻՊԼԻԿԱՏՈՐ (լատ.՝ multiplikator – բազմապատկող, մեծացնող), 1. (տեխ.) մեքենայի լիսեռի պտտման հաճախությունը բարձրացնող սարք (օր.՝ ատամնավոր փոխանցումը մեծացնող): 2. Հեղուկի ճնշումը մեծացնող սարք (օր.՝ պոմպերում և հիդրավլիկ. այլ մեքենաներում ու հարմարանքներում): 3. Լուսանկարչ. ապարատի հարմարանք՝ մեկ թիթեղի (ժապավենի) վրա մի քանի նեգատիվներ ստանալու համար: 4. (Տնտ.) գործակից, որը ցույց է տալիս դրական հակադարձ կապի բազմակի փոխազդեցության չափը կառավարվող համակարգի ելքային մեծության վրա: Քեյնսկի Մ. բնութագրում է ներդրումների ավելացման (նվազման) և եկամտի մեծության փոփոխության կապը: Մ-ի արդյունքն այն է, որ եկամուտն ավելի շատ է աճում, քան ավելանում են ներդրումները: Օգտագործվում է ***ակցելերատորի*** հետ:

ՄՈՒԼՏԻՊԼԻԿԱՑԻՈՆ ԿԻՆՈ, անիմացիոն կինո, կինոարվ-ի տեսակ, որի երկերն ստեղծվում են նկարված կամ ծավալ. օբյեկտների շարժման հաջորդ. փուլերի նկարահանմամբ: Մուլտֆիլմերը լինում են նկարչ. (1908, Ֆրանսիա) և ծավալ. (տիկնիկ., 1911, Ռուսաստան): Մ. կ-ի անվանի գործիչներից են Ու. Դիսնեյը (ԱՄՆ), Յ. Տրնկան (Չեխիա), Յ. Պոպեսկու-Գոպոն (Ռումինիա), Տ. Դինովը (Բուլղարիա), Վ. Ա. Ստարևիչը, Լ. Ա. Ամալրիկը, Ա. Լ. Պտուշոկը, Ֆ. Ս. Խիտրուկը, Վ. Մ. Կոտյոնոչկինը (Ռուսաստան) և ուր.:

Հայաստանում Մ. կ. սկզբնավորվել է 1937-ին («Շունն ու կատուն» ըստ Հ. Թումանյանի): 1947–67-ին Մ. կ-ի գործունեությունն ընդհատվել է, 1970-ական թթ-ից զարգացել է մուլտիպլիկատորներ Վալենտին ***Պողպտնոգովի***, Ռաֆայել ***Բաբայանի***, Ռոբերտ ***Սահակյանցի***, Լ. Խաչատրյանի, Արմեն ***Միրաքյանի***, Լ. Սահակյանցի, Է. Ավագյանի և ուր. ջանքերով:

ՄՈՒԼՏԻՊՈԼ (< ***մուլտի-***... և հուն.՝ polos – բևեռ), **բազմաբևեռ**, լիցքավորված մասնիկների համակարգի որոշակի փոխդասավորություն, որով պայմանավորվում է համակարգի էլեկտրամագնիս. դաշտը մեծ հեռ-յունների վրա: Զրոյական կարգի Մ. էլ. լիցք է, առաջին կարգինը՝ դիպոլ, երկրորդը՝ քվադրուպոլ, ևն:

ՄՈՒԼՏԻՎԻԲՐԱՏՈՐ (< ***մուլտի-***... և լատ.՝ vibro – տատանել), **բազմատատանակ**, ռելաքսացիոն գեներատոր, որն արտադրում է գրեթե ուղղանկյունաձև իմպուլսներ (տատանումներ), որոնց տևողությունը սովորաբար քիչ է տարբերվում նրանց միջև եղած միջակայքից: Օգտագործում են իմպուլս. և չափիչ տեխնիկայի, ռադիոտեխնիկայի սարքերում և այլուր:

ՄՈՒԼՔ (արաբ.՝ mulk – տիրույթ, սեփականություն, կալվածք), հող. տիրույթ Մերձ. և Միջին Արևելքի երկրներում, Արլ. Հայաստանում և Արլ. Այսրկովկասում: Առաջացել է արաբ. տիրապետության ժամանակ: Այսրկովկասում և Հայաստանում մուլքադարությունը գոյատևել է մինչև 1870-ական թթ-ի հող. բարենորոգումները:

ՄՈՒԼՔԻՋԱՆՅԱՆ Յակով Իվանի (1914–2001), բուսաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1970), պրոֆ. (1979): Աշխ-ները վերաբերում են Հայաստանի բարձրակարգ բույսերի (հատկապես՝ ծառաթփային) կարգաբանությանը, բնության պահպանությանն ու կանաչապատմանը: Համահեղինակ է «Հայաստանի ֆլորան» (ռուս., հ. 2–7, 1956–80) աշխ-յան, «Օգտակար բույսերի հայերեն-ռուսերեն-լատիներեն բառարանի» (1988):

ՄՈՒԽԱՄԱԶ (արաբ. – հնզակի), բանաստեղծության տեսակ Մերձ. և Միջին Արևելքի, Միջին Ասիայի պոեզիայում: Մ-ի տները բաղկացած են 5-ական տողերից. 1-ին 3 տողը հեղինակինն է, մյուս 2-ը՝ մեջբերում ուրիշ բանաստեղծություններից: Լայնորեն օգտագործվել է նաև հայ աշուղ. պոեզիայում:

ՄՈՒԽԱՆՔ, Մուխանք, Միխանք, գվո Արցախ նհնգ-ում՝ ***Կարկառ*** գետից հվ (1250 *կմ*² տարածությամբ): Եղել է Մխանց իշխան. տոհմի տիրույթը:

ՄՈՒԽԹԱՐ (Մուխթարով) Ասկադ (1920–1997), ուզբեկ գրող: Ուզբ. ԽՍՀ ժող. գրող (1981): Հեղինակ է «Քույրեր» (1954), «Ծնունդ» (1961), «Չինարա» (1969) ժամանակակիցների մասին վեպերի, «Մրրիկներում անդորր կա կարծես» (1976), «Նեղլիկ են Բուխարայի փողոցները» (1980) վիպակների, նաև «Իմ խոսքն առ ձեզ» (1978) բանաստեղծությունների ու պոեմների ժող-ի: Ուզբ. ԽՍՀ Պետ. մրց. (1973):

ՄՈՒԽԹԱՐՈՎ Հուսեյն (1914–1980), թուրքմեն դրամատուրգ: Հեղինակ է ժամանակակից թեմաներով «Մեր և զրպարտություն» (1943), «Ալլանի ընտանիքը» («Ընտանիքի պատիվը», 1948), «Միրոնը» (1972) պիեսների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ՄՈՒԽԻՆ Եֆրեմ Օսիպովիչ (1766–1850), վիրաբույժ, անատոմ, ֆիզիոլոգ, հիգիենիստ: Ռուսաստանի բժշկագիտ-յան մեջ անատոմաֆիզիոլոգ. ուղղության հիմնադիրներից, մշակել է գլխուղեղի՝ ֆիզիոլոգ. և ախտաբան. կենսընթացներում կարևոր դերի մասին ուսմունք:

ՄՈՒԽԻՆԱ Վերա Իգնատևնա (1889–1953), ռուս քանդ-ուհի: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1943): ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի ակադ. (1947): Հեղինակ է «Հեղափոխության բոցը» (1922–23), «Բանվորը և կոլտնտեսուհին» (1937) գործերի, «Բ. Յուսուպով» (1942), «Ի. Խիժնյակ» (1947) և այլ դիմաքանդակների: Ստեղծագործել է նաև գծանկարի, բեմանկարչության և դեկորատիվ արվ-ի բնագավառներում:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1943, 1946, 1951, 1952):

ՄՈՒԽՈՏԱՐ Մահմուդ (1891–1934), եգիպտացի քանդ.: XX դ-ի եգիպտ. ազգ. քանդ. դպրոցի հիմնադիրը: Ստեղծել է «Եգիպտոսի զարթոնքը» հուշարձանը (1919–28, Կահիրե), բանաստեղծ., գյուղացիների ընդհանրացված՝ խորհրդանշ. կերպարների շարք:

ՄՈՒԿՈՐԱՅԻՆ ՄՆԿԵՐ, զիգոմիցետների դասի սնկերի կարգ: Հայտնի է 250 տեսակ: Հիմնականում սապրոֆիտներ են: Որոշ Մ. ս. առաջացնում են բույսերի (եգիպտացորենի կողրերի գորշ փտում), մարդու և կենդանիների հիվանդություններ:

ՄՈՒԿՈՒՆ (Coregonus muksun), ***սիգեր*** սեռի գաղթող ձուկ: Երկ.՝ մինչև 75 *սմ*, կ. զ.՝ մինչև 8 *կգ*: Ապրում է Հս. սառուցյալ օվկ-ի քաղցրահամ ջրերում: Չուղպադրում է գետերում: Արդյունագործ. և բազմացման արժեքավոր ձուկ է:

ՄՈՒՀԱՄՄԱԴ ՌԵԶԱ ՓԱՀԼԱՎԻ (1919–1980), Իրանի վերջին շահը՝ 1941–79-ին: ***Փահլավիների հարստությունից***: Շահ է հռչակվել հոր՝ ***Ռեզա շահ Փահլավիի*** հրաժարականից հետո: Արտաքին հարաբերությունների բնագավառում կողմնորոշվել է դեպի Արևմուտք, մասնավորապես՝ ԱՄՆ: Վտարվել է երկրից 1979-ի հունվ-ին իրան. հեղ-յան ժամանակ:

ՄՈՒՀԱՄՄԱԴԻ (Մուհամմադիև) Կուդուս (1907–1997), ուզբեկ գրող: Ուզբ. ԽՍՀ ժող. գրող (1982): Հեղինակ է մանկ. բանաստեղծությունների ժող-ների և չափածո հեքիաթների («Ձանկություն», 1948, «Քառասուն որդի և քառասուն դուստր», 1951, «Թևավոր ընկերներ», 1967, «Բնության այրուրենը», գիրք 1–5, 1974–81): Ուզբ. ԽՍՀ Պետ. մրց.:

ՄՈՒՀԱՄՄԵԴ (մոտ 570–632), ***մահմեդականության*** հիմնադիրը, որին երկրպագում են որպես Ալլահի մարգարեի, որի միջոցով աշխարհին շնորհվել է ***Ղուրանը***: Սերում է Մեքքայում կուրեշիտների տոհմի արաբ. խաշիմ ցեղից: Մոտ 610-ին քարոզել է 'նոր' միաստված. կրոնը: 622-ին Մ. իր հետևորդների հետ ստիպված է եղել տեղափոխվել (հիջրա) Մեքքայից Յասրիբ, որը հետագայում նրա պատվին կոչվել է ***Մեդինա*** (Մարգարեի քաղաք): Այստեղ Մ. դարձել է աստվա-

ծապետության առաջնորդ (630–632-ին նվաճել է Մեքքան և Արաբիայի զգալի մասը)։ Մ-ի գերեզմանը Մեդինայի մզկիթում սրբավայր է։ Մ-ի դստեր՝ Ֆաթիմայի (Մ-ի զարմիկ Ալիի կինը) ժառանգները կազմավորել են սայիդների (շերիֆներ) արտոնյալ խումբը։

ՄՈՒՀԱՄՄԵԴ II Ալա Ադ-Դին (ծ. թ. անհտ–1220), Խորեզմի շահ՝ 1200-ից։ Իշխել է Իրանի, Ատրպատականի, Խորասանի, Աֆղանստանի, Մավերանահրի և այլ տարածքների վրա։ Ձախջախել է *Կարակիդանիներին*, պարտվել (1220) *Չինգիս խանին*։

ՄՈՒՀԱՄՄԵԴ II, **Մեհմետ II** (Mehmet), Ֆաթիհ (նվաճող,1432–1481), Թուրքիայի սուլթան՝ 1444–46-ին և 1451-ից։ Նվաճող. քաղ-յուն է վարել Փոքր Ասիայում և Բալկաններում։ 1453-ին գրավելով Կ. Պոլիսը՝ վերացրել է Բյուզ. կայսրությունը, այն դարձրել է Օսմ. կայսրության մայրաքաղաքը։ Նրա օրոք Կ. Պոլսում հաստատվել է (1461) հայ համայնքի (Էրմենի միլլեթի) պատրիարքությունը, և *Հովակիմ Պրուսացին* նշանակվել է հայոց պատրիարք։

ՄՈՒՀԱՄՄԵԴ V (1909–1961), Մարոկկոյի թագավոր՝ 1957-ից, 1927–53, 1955–57-ին՝ սուլթան՝ *Ալաուիների* հարստությունից։ ԵՀՊ-ից հետո հանդես է եկել Մարոկկոյին անկախություն տալու պահանջով։ 1953–55-ին աքսորվել է Մադագասկար։

ՄՈՒՀԱՄՄԵԴ VI Վահիդեդդին (1861–1924), Օսմ. կայսրության վերջին սուլթանը՝ 1918-ից։ Ա.ՀՊ-ում Թուրքիայի պարտությունից հետո հանդես է եկել Քեմալ. շարժման դեմ։ Թուրքիայի Ազգ. մեծ ժողովը նրան մեղադրել է պետ. դավաճանության մեջ և 1922-ի նոյեմբ-ին վերացրել սուլթանությունը, գահընկեց արել Մ. VI-ին և արտաքսել Թուրքիայից։

ՄՈՒՀԱՄՄԵԴ ԱԼԻ (1769–1849), Եգիպտոսի փաշա՝ 1805-ից (ծագումով՝ ալբան)։ Իր հիմնադրած հարստությունը կառավարել է մինչև 1952-ի Հուլիսյան հեղ-յունը։ Ստեղծել է կանոնավոր բանակ, վարել է նվաճող. պատերազմներ, Եգիպտոսը փաստորեն անջատել է Թուրքիայից։ Հովանավորել է եգիպտահայ արդյունաբերողներին, առևտրականներին ու արհեստավորներին, արվ-ի մարդկանց։

ՄՈՒՀԱՄՄԵԴ ԲԵՆ ԱԲԴԱԼԼԱ Սայիդ ալ Հասան (1860–1920), Սոմալիի ազատագր. ապստամբության ղեկ. (1899–1920)՝ բրիտ. և իտալ. գաղութարարների դեմ։ Սոմալիի ժողդ-ի Ազգ. հերոս։

ՄՈՒՀԱՄՄԵԴ ՂՈՐԻ (1149–1206), նվաճող, զավթել է Հս. Հնդկաստանը։ *Ղորիների* հարստությունից։ 1170–80-ական թթ-ին վերացրել է *Ղազնևիների* պետությունը։ 1203–06-ին՝ Ղորիների պետության սուլթան։

ՄՈՒՀԱՐԱՄ (արաբ.՝ սրբազան), մահմեդ. լուսնային օրացույցի 1-ին ամիսը, որի ընթացքում ընդունված է ողորմություն բաժանել։ Մ-ի 1-ին 10 օրերը համարվում են օրհնված, շիիթների մոտ դրանք սգի (աշուրա) օրեր են։

ՄՈՒՀԵՆՏԻՍՅԱՆ Վահրամ Գրիգորի (1895–1952), ջութակահար, դիրիժոր։ 1923-ին Կ. Պոլսում աշակերտների հետ հիմնադրել է սիմֆ. նվագախումբ և ղեկավարել մոտ 20 տարի։ Մ-ի ջանքերով Կ. Պոլսում 1933-ին առաջին անգամ կատարվել է Լ. վան Բեթհովենի 9-րդ սիմֆոնիան։

ՄՈՒՂԱՄ, Արևելքի դաս. ավանդ. երաժշտության հիմն. ժանրերից, բազմաս, վոկալ գործիք. կամ գործիք. իմպրովիզացիոն. ոճի ստեղծագործություն՝ միասն. ձայնակարգ. հիմքով։ Համարժեք է մակամին, մակոմին, մուկամին, դաստգահին, ռագային։ Օգտագործվում է Մ-ձայնակարգ և Մ-ժանր հիմն. իմաստներով։ Հայ իրականության մեջ տարածված են Մ-ի միայն գործիք., հակիրճ տարբերակները։ Մ-ներն առաջինը նոտագրել է Նիկողայոս *Տիգրանյանը*։

ՄՈՒՂՆԵՑՅԱՆ Վահագն Մարտինի (ծ. 1947), գրող։ Հեղինակ է «Ալիզ» (1986), «Եկվորներ» (1989), «Տարու» (2008) վեպերի, «Ճանապարհը շրջանակի մեջ» (1984) պատմվածքների, «Տարիներ» (1992), «Բազմաշավիղ» (2003), «Ջոհանվեր։ Խոսմունք» (2013) և այլ բանաստեղծությունների ու պոեմների ժող-ների։

ՀԳՄ Դ. Դեմիրճյանի (1989), Դ. Վարուժանի (1997) անվ., ՀՀ նախագահի (2010) մրց-ներ, Հ. Շիրազի անվ. արծաթե (1986), ՄՆ ոսկե (2008) մեդալներ։

«ՄՈՒՂՆԻ», հրտչ-յուն։ Հիմնադրվել է 1994-ին Երևանում՝ Ռոման Կոզմոյանի ջանքերով։ Տնօրեն՝ Ռուզաննա Պետրոսյան։ 2001–03-ին համագործակցել է Մեսրոպ արք. *Աշճյանի* հետ։ Տպագրում է կրոն., պատմ., արվեստագիտ., գեղ. գրկ.։

ՄՈՒՂՆՈՒ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ՎԱՆՔ, XIV դ-ի ճարտ. համալիր ՀՀ Սիւնիի գ-ում (Աշտարակ ք-ի վարչատարածք. կազմում)։ Հիմնովին վերակառուցվել է 1664–69-ին (ճարտ-ներ՝ *Սահակ Հիզանցի*, *Մուրադ*)։ Վանքի գմբեթավոր բազիլիկին արմ-ից կից է եռակամար բաց սրահը, աղոթասրահն ավարտվում է կիսաշրջանաձև խորանով՝ 2 կողմերում՝ ավանդատներով։ Ինտերիերը 2 զույգ խաչաձև մույթերով և նրանց միջև ձգված կամարներով բաժանված է 3 նավի։ Աշխարհիկ շինությունները (XVII դ.) խմբավորված են համալիրի հս-արլ. կողմում։ Վերանորոգվել և վերաօծվել է 2000-ին։

ՄՈՒԻՄԻՈ, **լեռնային բալասան**, բնական ծագման կենսաբանորեն ակտիվ նյութ։ Խեժանման է, արտահոսում է ժայռերի ու լեռների ճեղքերից։ Պարունակում է մեծ քանակությամբ օրգ. և անօրգ. նյութեր, հիպուրաթթու, ամինաթթուներ, խեժեր, մոմանյութ, բուս. մնացորդներ և միկրոտարրեր։ Օժտված են բալասաններին բնորոշ հոտով։ Օգտագործում են ժող. բժշկության մեջ։

ՄՈՒՀԻԹ, հարթ ծածկեր, կամարներ, թաղեր կրող կառուցվածք. տարր՝ մեծ հատվածքի սյուն։ Հայ ճարտ-յան մեջ առկա են Մ-ի հիմն.՝ ուղղանկյուն, եռաթև (Քասաղի, Եղվարդի բազիլիկները ևն), խաչաձև (Աղցի եռանավ բազիլիկը, Էջմիածնի, Տեկորի տաճարները ևն) կտրվածքներով տիպերը։

ՄՈՒՆԴԱ. ԼԵԶՈՒՆԵՐ, Հնդկաստանի հնագույն լեզվախմբերից։ Պատկանում է ավստրա-ասիական լեզվաընտանիքին։ Ներառում է քերվարի, կուրկու, քարիա, ջուանգ, գադաբա, մունդարի և այլ լեզուներ։

ՄՈՒՆԴԱՆԵՐ (ինքնանվանումը՝ հորոկո), մունդա խմբի ժողդ Հնդկաստանի հս-արլ-ում (հիմնականում՝ Բիհար նահց-ում)։ Ընդհ. թիվը՝ 1 մլն (2001)։ Լեզուն՝ մունդարի։ Հավատացյալները հիմնականում ավանդ. հավատալիքների հետևորդ են, կան հնդուականներ և քրիստոնյաներ։

ՄՈՒՆԻԵ (Mounier) Էմանուել (1905–1950), ֆրանսիացի փիլ.։ Ֆրանս. պերսոնալիզմի հիմնադիրն ու առաջնորդը, քրիստ. սոցիալիզմի կողմնակիցներից։ Մարդկության ազատագրումը հնարավոր է համարել բարոյական նորացման, հոգևոր հեղ-յան միջոցով։

ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏ (գերմ.՝ Munizipalität), ընտրովի քաղաք. մարմին տարբեր երկրների տեղ. ինքնակառավարման համակարգում։ Գործառույթների իրականացման համար Մ., որպես կանոն, կարող է ընդունել պարտադիր որոշումներ, սահմանել տեղ. հարկեր, տիրապետել օրենքով սահմանված գույքի (մունիցիպալ սեփականություն)։ Տես նաև *Քաղաքապետարան*։

ՄՈՒՆԿ (Munk) Անջեյ (1921–1961), լեհ կինոռեժ.։ «Մարդը ռելսերի վրա» (1957), «Eroica» (1958), «Ճլաչ երջանկություն» (1959, խորհրդ. էկրանին՝ «Յան Պիշչիկի վեց կերպարանափոխությունը») ֆիլմերում քննադատել է կաստայական բարոյականության դոգմաները։ «Ուղևորուհին» կինոնկարում (1964, ավարտել է Վ. Լեսնիչը) վերլուծել է ֆաշիստ. բռնության մեխանիզմը։

ՄՈՒՆԿ Կայ (1898–1944), դանիացի դրամատուրգ։ Հեղինակ է «Իդեալիստը» (1928), «Նիլս Էբեսենը» (1942) պատմ. դրամաների, «Նա նստած է հալքանոթի մոտ» (1938) հակաֆաշիստ. թեմայով պիեսի, նաև բանաստեղծությունների ու քարոզների։ Սպանել են ֆաշիստները։

ՄՈՒՆԿԱՉԻ (Munkácsy), **Լիր**, Միխայ (1844–1900), հունգար գեղանկարիչ։ Հեղինակ է ժող. կյանքի և ազգ–ազատագր. պայքարի թեմաներով նկարների («Մահապարտի խուցը», 1870, «Գիշերային շրջմոլիկներ», 1873), դիմանկարների, բնանկարների, նաև կրոն., պատմ. թեմաներով և ժանր. գործերի («Ահա մարդը», 1896)։

ՄՈՒՆՉՅԱՆ Նշան Առաքելի (ծ. 1963), բռնցքամարտիկ։ ԽՍՀՄ ս. վ. վ. (1989)։ Աշխարհի (1993), Բարի կամքի խաղերի (1986), Եվրոպայի (1987), ԽՍՀՄ (1986, 1987, 1989, 1991), Հայաստանի բազմակի չեմպիոն։ Աշխարհի (1994), ԽՍՀՄ (1986, 1989), ԱՊՀ երկրների (1992) գավաթակիր։ ՀԱՕԿ-ի գլխ. քարտուղար (1990–2000), գործկոմի անդամ (2000-ից)։

ՄՈՒՆՋՅԱՆ Հենք (Սմբյան Արմենն, 1930–2012), կինոռեժ., պրոդյուսեր։ «Մրցանակը», «Անսովոր զույգը», «Երեխայի խաղը», «Երգող միանձնուհին», «Մեծն Գեթսբին», «Վտանգավոր կապեր» (ըստ Շ. դը Լակլոյի վեպի, 1988, Օսկար մրց.) և այլ ֆիլմերի պրոդյուսերն է։ Համագործակցել է MGM ստուդիայի հետ։

ՄՈՒՆՏԱԿ, *ևղջերուների* ընտանիքի երկկճղակավոր կենդանի։ Երկ.՝ 80–100 *սմ*, բարձր.՝ մինչև 65 *սմ*, կ. զ.՝ մինչև 35 *կգ*։ Ապրում է Հվ–արլ. Ասիայի անտառներում։ 2 ենթատեսակ (դիտվում են նաև որպես տեսակներ) գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում։

ՄՈՒՆՑ–ՄԵՏԱՂ, Cu-ի (57–61 %) և Zn-ի (մնացածը) համաձուլվածք, երբեմն՝ Pb-ի (0,8–1,9 %) հավելումով, *արույրի* տարատեսակ։ Կոչվել է 1832-ին այդ համաձուլվածքն առաջարկած անգլիացի արդյունաբերող Ջ. Մունցի անունով։ Ունի բարձր քայքայումակայունություն, հեշտ դեֆորմացվում է և մշակվում՝ կտրումով։

ՄՈՒՆՔ (Munch) Էդվարդ (1863–1944), նորվեգացի գեղանկարիչ, գրաֆիկ։ Գործերին բնորոշ են տագնապի, մաևվան մոտիվները («Ճիչ», 1893, «Կյանքի պարը», 1899, ևն)։ Նախանշել է էքսպրեսիոնիզմի ծնունդը։

ՄՈՒՇ, ք. Տուրուբերան նահգ–ի *Տարոն* գավ–ում՝ Մշո դաշտի հվ. մասում՝ Հայկ. Տավրոս լ–շղթայի ստորոտին՝ Կուրտիկ և Ծիրինկա–տար լ–ների փեշերին՝ Մեղրագետի ձախ ափին: Հնում Տարոնի հետ պատկանել է Սլկունիներին, ապա՝ Մամիկոնյանների սպարապետ. ճյուղին, Արաբ. խալիֆութ–յան դեմ 774–775–ի ապստամբությունից հետո անցել է Բագրատունիներին: Թուրք. տիրապետության տակ է XVI դ–ից: XX դ–ի սկզբին Մ. համանուն գավ–ի և գավոկ–ի կենտրոնն էր, միաժամանակ՝ հայոց թե–մական աթոռանիստը: Քաղաքի մշակութ. կյանքում մեծ դեր է խաղացել *Մշո Մուրբ Առաքելոց վանքը*: 1914–ին ունեցել է ավելի քան 12 հզ. հայ բն., որոնք 1915–ին ենթարկ–վել են զանգված. բնաջնջման (տես *Մուշի գոյամարտ 1915*): Այժմ Մ. փոքր քաղաք է և համանուն նահգ–ի կենտրոնը:

«ՄՈՒՇ», մսամթերք արտադրող ընկ. Երևանում: Հիմնադրվել է 1991–ին: Ար–տադրում է կիսաֆաբրիկատներ, եր–շիկներ, նրբերշիկներ, ապխտած միս, բաստուրմա ևն:

ՄՈՒՇԵ Ա. ԱՅԼ. ԱԲԵՐՅԻ (ծ. թ. անհտ–534), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 526–ից: Հի–շատակում է պատմիչ Ստեփանոս Օրբել–յանը՝ Սյունիքում եպիսկոպոս. ընտրութ–յուններ անցկացնելու կապակցությամբ:

ՄՈՒՇԵՂ Ա. (ծ. թ. անհտ–984), *Կարսի թա–գավորության* հիմնադիրը (963): *Աբաս Բագրատունու* որդին և *Աշոտ Գ Ողորմածի* եղբայրը: Իրեն թագավոր է հռչակել, երբ Աշոտ Գ–ն Բագրատունիների թագավո–րության մայրաքաղաք է հռչակել (961) Անին, իսկ Մ. Ա–ին նշանակել Կարսի և նրա գավ–ների կառավարիչ: Աշոտ Գ–ն Մ. Ա–ի թագավորությունը ճանաչել է որպես իրեն ենթակա իշխանություն:

ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ (Ճենտերեճյան Մուշեղ Սրապիոնի, 1914–1990), գրող, մշակույթի, կրթ. գործիչ, խմբ.: 1941–45–ին՝ *«Ազդակ»* թերթի խմբ.: Մ. Ի–ի գործերի հիմքում տարագիր հայի պայքարն է ուծացման վտանգի դեմ: Հեղինակ է «Տուներու երգը» (1936), «Կեանք ու երազ» (1949), «Ոսկի աշուն» (1963), «Տառապանք» (1968) և այլ քնարախոհ. բանաստեղծություննե–րի ժող–ների, «Մեռնիլը որքան դժուար է» (1971), «Սառնարանէն ելած մարդը» (1979), «Թատերախաղեր» (1980) պիես–ների, «Հացի եւ լոյսի համար» (1951), «Հացի եւ սիրոյ համար» (1956), «Մնաս բարով, մանկութիւն» (1974) վեպերի, «Սպասում» (1977) վիպակի, «Արդի հայ գրականութիւն» (հ. 1–3, 1973–75) աշխ–յան: Երևանում բեմադրվել են Մ. Ի–ի «Կի–լիկիոյ արքան» (1989), «Մեռնիլը որքան դժվար է» (1992) պիեսները:

ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ (ծ. թ. անհտ–մոտ 376), Հայոց սպարապետ՝ 368–ից: Հաջորդել է հորը՝ *Վասակ Մամիկոն–յանին*: Աջակցել է Պապ թագավորին՝ Մեծ Հայքի թագավորության գահը վե–րականգնելու համար: Ղեկավարել է *Ձիրավի ճակատամարտը* (371): Պապ թագավորի դավադիր սպանությունից հե–տո Հայոց թագավոր Վարազդատը *Բապ Սահառունու* և այլոց ամբաստանությամբ սպանել է տվել Մ. Մ–ին:

ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ, Հայաստանի բյուզ. մասի դուքս՝ VI դ–ի վերջ–VII դ–ի սկզբին: Գլխավորել է նաև Հայոց այրու–ձին՝ Թրակիա ներխուժած ավարների դեմ պայքարում, տարել մի քանի հաղթանակ: Ի վերջո գերվել է և սպանվել:

ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ, VII դ–ի կե–սի իշխան և զորավար: Ունեցել է բյուզ. կողմնորոշում, հակադրվել է *Թեոդորոս Ռշտունուն*: Բյուզանդիայի կայսր Կոս–տաս II–ը Դվինում Մ. Մ–ին նշանակել է Հայոց սպարապետ: Մ. Մ. 656–ին չեզոք դիրք է գրավել *Համազասպ Մամիկոն–յանի* հակաարաբ. պայքարում, իսկ Բյու–զանդիայի կայսրը Մ. Մ–ին ձերբակալել է և տարել Կ. Պոլիս:

ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ (ծ. թ. անհտ–775), իշխան, զորավար, Արաբ. խալի–ֆության դեմ 774–775–ի ապստամբության ղեկ.: Ապստամբները (նրանց էր միացել նաև սպարապետ *Ամրապ Բագրատու–նին*) 5–հզ–անոց զորքով պաշարել են Կա–րինը: Սակայն Հայաստան է մտել արաբ. 30–հզ–անոց զորք. ապստամբները թողել են պաշարումը և թշնամուն դիմագրավել Արձնի գ–ի մոտ (տես *Արձնիի ճակատա–մարտ 775*), որտեղ Մ. Մ. զոհվել է:

ՄՈՒՇԵՂ ՌՈՄԱՆՈՍ, Ռոմանոս Մուշեղ, X դ–ի բյուզանդացի հայազգի գործիչ, մագիստրոս: Կայսր *Ռոմանոս I Լակա–պենոսի* թոռը: Գործել է Կոստանդին VII Ծիրանածին (945–959) և Ռոմանոս II (959–963) կայսրերի օրոք:

ՄՈՒՇԵՂՅԱՆ Ալբերտ Վարազդատի (ծ. 1931), գերմ–ի և արտ. գրկ–յան մաս–նագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1996): Աշոտ *Մուշեղյանի* եղբայրը, Աստղիկ *Մուշեղյանի* հայրը: Բրայլյան տպարանի հիմնադիր և գլխ. խմբ. (1956): 1965–73–ին՝ Հայաստանի կույրերի միավորման նախագահ: Մ–ի նախաձեռնությամբ կառուցվել են շենքեր, այդ թվում՝ ակնա–բուժ. կենտր. կլինիկա (ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան, 1967 և «Աշխատանքի արիության» մեդալ, 1970), № 16 հատուկ դպրոցը Նոր Նորքում: Հեղինակ է «Ավե–տիք Իսահակյան» (1983), «Արմին Թեոֆիլ Վեգներ» (թարգմ. գերմ–ից՝ 2000), «Մով–սես Խորենացու դարը» (2007, «Դոլորես Զոհրաբ Լիբման ֆոնդի» առաջին կարգի մրց., 2008) գրքերի: Գերմ–ից թարգմա–նել է Հայնեի «Գերմանիա. Ձմեռային հեքիաթ» պոեմը (1959), Յ. Վ. Գյոթեի, Ն. Լենաուի, Յ. ֆոն Այխենդորֆի գործերից:

ՀՀ ՄՆ ոսկե (2014), «Հայրենիքի պաշտ–պանության համար» (2016) մեդալներ:

ՄՈՒՇԵՂՅԱՆ Աշոտ Վարազդատի (1933–1994), ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դ–ր (1986), պրոֆ. (1988): Ալբերտ *Մուշեղյանի* եղբայ–րը: Աշխ–ները վերաբերում են թունավոր արտանետումները վնասազերծող չեզո–քարարների կատալիզորդների մշակման հարցերին: Առաջարկել է որդան կարմի–րից քիմիապես մաքուր ներկանյութերի ստացման եղանակ:

ՄՈՒՇԵՂՅԱՆ Աստղիկ Ալբերտի (ծ. 1959), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (2005): Ալբերտ *Մուշեղյանի* դուստրը: Ուսումնասիրությունները վերաբերում են հայ միջնադար. երաժշտության պատմությանն ու տեսությանը («Արմաշի դպրեվանքը», համահեղ.՝ Պ. Մուրադյան, 1998, ևն):

ՄՈՒՇԵՂՅԱՆ Գուրգեն Ներսեսի (ծ. 1934), ճարտ.: ՀՀ վաստ. ճարտ. (1981): ՀՃԱ (1996), ՌԴ ճարտ–յան և շին–յան ԳԱ արտ. (1999) անդամ: Պրոֆ. (1993): Երևան–նախագիծ ընկ–յան գործադիր տնօրեն: Համահեղինակ է Երևանում՝ «Հրազդան» մարզադաշտի (1971, ՀՀ Պետ. մրց.՝ 1979), Մարզահամերգ. համալիրի (1984, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1987), Գյումրիում՝ օդանավա–կայանի (1982) նախագծերի: Ղեկավարել է (1991–95) ՀՀ քաղաքների սեյսմիկ գո–տի՝ներում քաղաքաշինության համա–կարգերի կայունության և հուսալիության նախագծերի, Երևանի 2006–20–ի գլխ. հատակագծի (2001–05) մշակումը ևն: ՀՀ «Անանիա Շիրակացի» մեդալ (2007):

ՄՈՒՇԵՂՅԱՆ Գևորգ Ռուբենի (1911–2006), ճարտ.: ՀՀ վաստ. շինարար (1961): Նա–խագծերով կառուցվել են Արտաշատում՝ ակումբ (1937), Երևանում՝ «Կարապի լիճը» (1963), «Էրեբունի լիճը» (1965), վերակա–ռուցվել Թատեր. (1964), Վարդավառի (1974) այգիներ ևն: Ա. Թամանյանի անվ. ոսկե մեդալ (2002):

ՄՈՒՇԵՂՅԱՆ Խաչիկ (Խաչատուր) Արտա–շեսի (1919–1992), պատմաբան, դրամա–գետ: Պատմ. գիտ. դ–ր (1975): 1955–90–ին՝ ՀՊՊԹ դրամագիտ–յան բաժնի վարիչ: Հեղինակ է «Հայաստանի դրամական գանձերը» (հ. 1, 1973), «Դրամական շրջա–նառությունը Հայաստանում..., մ. թ. ա. V դ.–մ. թ. XIV դ.» (1983), «Հայոց պատ–մության դրամագիտականը» (1997) և այլ աշխ–ների: Լոս Անջելեսի Հայ դրամագիտ. ընկերակցության անդամ:

ԽՍՀՄ Կարմիր աստղի, ՀՄՊ 2–րդ աս–տիճանի շքանշաններ:

ՄՈՒՇԵՂՅԱՆ Նորայր Թագվորի (1935–2011), մարզիկ, մարզիչ: ԽՍՀՄ ս. վ. (1956), ս. վ. վ. (1963), ՀՀ վ. մ., ՀՀ ֆիզկուլտուրա–յի և ս. վ. գ. (1978): 1966–ից հիմնադրել և ղեկավարել է Օլիմպ. հերթափոխի ըմբշամարտի մասնագիտացված մար–զադպրոցը: 1962–67–ին՝ ՀԽՍՀ, 1967–68–ին՝ ԽՍՀՄ, 1971–75–ին՝ Աֆղանստանի, 1978–ին՝ Արգենտինայի, 1980–ին՝ Սավրի–կիայի, 1982–ին՝ Մեքսիկայի ազգ. օլիմպ. հավաքականների մարզիչ: «Զորավար Անդրանիկ համազգային միություն» ՀԿ նախագահ (1986–ից):

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի, Ժողդ–ների բարեկամության շքանշաններ:

ՄՈՒՇԵՂՅԱՆ Սարգիս Արտաշեսի (1926–2004), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1963), պրոֆ. (1966): ԽՍՀՄ–ում 1–ինն է մշակել լյարդի ցիռոզով հիվանդների վիրաբուժ. բուժման և ներսրտային վիրահատութ–յունների ժամանակ արյան արհեստ. շրջանառության կիրառման մեթոդները, ստեղծել է բաց սրտի վիրահատության սարքավորում: Մշակել և ներդրել է նուրբ հյուսվածքների սոսնձման եղանակ, կա–տարել երիկամների փոխպատվաստում:

ՌՖՆԳԱ անդամ (1998) և արծաթե մեդալ (2001), ԽՍՀՄ ԺՏՆՑ 3 ոսկե մեդալներ:

ՄՈՒՇԵՂՅԱՆ Տիգրան Պետրոսի (1886–1935), ֆիզիոլոգ, լուսավորության բնա–գավառի գործիչ: Եղել է Հայաստանի լուս–ժողկոմատի վարչության պետ: 1921–ին ԵՊԻ–ում կազմակերպել է ֆիզիոլոգիայի ամբիոն: 1933–35–ին՝ ԵՊՀ ռեկտոր: Մ–ի անունով է կոչվել (1973–ից) ԵՊՀ կենսբ. ֆակ–ի մարդու և կենդանիների ֆիզիո–լոգիայի ամբիոնը:

ՄՈՒՇԻ ԳՈՅԱՄԱՐՏ 1915, Մուշ ք–ի ու գավ–ի հայ բնակչության (94 հզ.) ինքնա–պաշտպ. կռիվները թուրք ջարդարարանե–րի դեմ հունիս–հուլիսին: 1915–ի գարնանը թուրք. կանոնավոր զորամասերը քրդ. աշիրեթների հետ կոտորել են Ցրոնք, Գոմս, Հերկերտ գ–երի բնակչությանը: Մուշի հայերին լրիվ բնաջնջումից փրկել են մոտեցող հայ կամավորներն ու ռուս. բանակը: Մուշի հայոց առաջնորդները (Հ. Կոտոյան և ուր.) կազմակերպել են զին–

ված դիմադրություն: Սակայն շուտով ռուս. բանակը նահանջել է, թուրք. զորքերն անցել են հարձակման և մշեցիների ինքնապաշտպանությունն ավարտվել է կոտորածով:

ՄՈՒՇԿ (լատ.՝ muscus), կենդ. կամ բուս. ծագման հոտավետ նյութ: Կենդ. Մ. *մշկագեղձերի* արտազատուկ է. կարևոր նշանակություն ունի քիմ. ազդանշանով տարածքը նշագծելու և այլ սեռի առանձնյակներին հրապուրելու, նաև իր բուրդը յուղելու համար: Բուս. Մ. պարունակվում է դեղաբույսերի արմատներում, իբիսկուսի և այլ բույսերի սերմերում: Բուս. հոտավետ Մ–ի հիմքը մակրոցիկլիկ լակտոններն են, կենդ. Մ–ինը՝ մակրոցիկլիկ կետոնները: Օգտագործում են օծանելիքի արդ–յան մեջ:

ՄՈՒՇԿԵՏ (իսպ.՝ mosquete), պատրույգավոր փականակով ձեռքի *հրազեն*: Երևան է եկել XVI դ–ի սկզբին Իսպանիայում: Կրակելու ժամանակ առաջացող ուժեղ հետհարվածի հետևանքով Մ–ով զինվել են միայն ընտրովի զինվորները՝ մուշկետակիրները:

ՄՈՒՇԿԵՏԻԿ Յուրի Միխայլովիչ (ծ. 1929), ուկրաինացի գրող: Հեղինակ է «Սեմյոն Պալի» (1954), «Հայդամակներ» (1957) պատմավեպերի, «Մի կաթիլ արյուն» (1964) վեպի, «Դաժան գթասրտություն» (1973), «Տեսակետ» (1979), «Սահման» (1986) վիպակների, նաև պատմվածքների:

Ուկր. ԽՍՀ (1980), ԽՍՀՄ (1987) Պետ. մրց–ներ:

ՄՈՒՇԿԵՐ, մուշքեր, ցեղախումբ Փոռւգիայում: Հիշատակվում են ասորեստանյան և ուրարտ. արձանագրություններում (մ. թ. ա. VIII–VII դդ.), Աստվածաշնչում (մեղեք, մոսոք):

ՄՈՒՌԵՅ, Մարի (Murray), Ավստրալիայի ամենամեծ գետը: Երկ.՝ 2570 *կմ*, ավազանը՝ 1057 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 330 *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Ավստրալ. Ալպերից և թափվում Հնդ. օվկ.: Գլխ. վտակները՝ Դաոլինգ և Մարամբիջի: Նավարկելի է Օլբերի ք–ից: Կառուցվել է խոշոր ջրամբար և ջրէկ:

ՄՈՒՌՆԱՈՒ (Murnau, Պլումպե) Ֆրիդրիխ Վիլհելմ (1888–1931), գերմանացի կինոռեժ.: Ֆիլմերում նկատելի է էքսպրեսիոնիզմի ազդեցությունը («Նոսֆերատու՝ սարսափի սիմֆոնիա», 1922, խորհրդ. էկրանին՝ «Արյունախում Նոսֆերատը»), «Վերջին մարդը» (1925, խորհրդ. էկրանին՝ «Մարդը և շքազգեստը»), «Տարտյուֆ» (1926) ևն:

ՄՈՒՌՆԵՐ (Murner) Թոմաս (1475–1537), գերմանացի բանաստեղծ: Եկեղեց. քարոզիչ: Հետևելով Ս. Բրանտին («Հիմարների նավ», 1494)՝ գրել է «Հիմարների նզովք» և «Խաբերաների համքարություն» (երկուսն էլ՝ 1512) երգիծ. բանաստեղծությունները: Եղել է Ռեֆորմացիայի հակառակորդ: «Լյութերական մեծ հիմարի մասին» (1522) սատիրայում ծաղրել է Մ. *Լյութերին*:

ՄՈՒՍԱ ԼԵՌ, Միջերկր. ծովի Անթաքիա ծոցի և Որոնտես գետի ստորին հոսանքի միջև. Ամանոսի լ–շղթայի հվ. միջերկրածովահայաց զանգվածն է: Բարձր.՝ 1355 *մ*: Մ. լ. հայտնի է 1915–ի հերոսամարտով (տես *Մուսա լեռան հերոսամարտ 1915*):

ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏ 1915, Սվեդիայի (Սուեդիա) հայերի ինքնապաշտպ. կռիվները *Մուսա լեռան* վրա (Հալեպի նահնգ–ի Անտիոք գվո–ում՝ Սվեդիա գք–ի մոտ): 1915–ի գարնանը, երբ թուրք. իշխանություններն սկսել են հայ բնակչության տեղահանությունն ու բնաջնջումը, հուլիսի 29–ին Յողունօլուք գ–ում 6 հայկ. գյուղերի ներկայացուցիչները ստեղծել են ինքնապաշտպ–յան Զինվ. խորհուրդ՝ Եսայի *Յաղուբյան* (ղեկ.), Պ. Տմլաքյան, Տ. Անդրեասյան և ուր. ու բարձրացել Մուսա լ.: Մոտ 5 հզ. հայերից զինված էր ընդամենը 600–ը: Օգոստ. 7, 10, 19–ի հարձակումներով չկարողանալով կոտրել մուսալեռցիների դիմադրությունը՝ թուրքերը կենտրոնացրել են 15–հզանոց զորք և որոշել լեռը պաշարելով՝ սովամահ անել հայերին: Սեպտ. 9–ի արյունալի մարտից հետո նրանց 13–15–ին (4058 հայ) ֆրանս. նավերով տեղափոխել են Պորտ Սաիդ:

Մ. լ. ի. Մեծ եղեռնի ժամանակ հաջողությամբ ավարտված ինքնապաշտպ. կռիվներից է: Նրա մասին է Ֆ. *Վերֆելի* «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը, որը թարգմանվել է 34 լեզվով:

ՄՈՒՍԱԼԱ, լ–գագաթ Բուլղարիայում՝ Ռիլի լ–ներում, Բալկան. թ–կղզու ամենաբարձր լ–գագաթը (2925 *մ*):

ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ Հովիկ Գաստելլոյի (ծ. 1968), գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (2010), պրոֆ. (2010): Հեղինակ է «Բառի ինքնաիաղթահարման խորհուրդը» (2006), «Պոեզիայի ներքին տարածություններ» (2010) մենագրությունների:

ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ Շաբո Ասլանի (1916–1986), օդերևութաբան: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1968): ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1980): Աշխ–ները վերաբերում են եղանակի երկարաժամկետ կանխատեսմանը, օդերևութաբան. շարժընթացների վրա լեռնագրության ազդեցությանը ևն: ԽՍՀՄ ԳԱ ժ. Մուլտանովսկու անվ. մրց.:

ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ Սարգիս Գրիգորի (1882–1920), 1920–ի *Մայիսյան ապստամբության* ղեկ–ներից: Գլխավորել է Հայաստանի ռազմահեղ. կոմիտեն: Ապստամբության ճնշումից հետո գնդակահարվել է:

ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ Սարգիս Մովսեսի (ծ. 1932), հիդրոտեխնիկ: Տեխ. գիտ. դ–ր (1972), պրոֆ. (1979): Աշխ–ները վերաբերում են ջր. պաշարների կազմավորման, հաշվարկման արդյունավետ օգտագործման, պահպանման, նաև տնտեսագիտ. գնահատման հարցերին:

«ՄՈՒՍԱՅԻՔ ՄԱՍԵՑՅ», թատեր. շաբաթաթերթ (1857–58, 1863–66, Կ. Պոլիս): Խմբ.՝ Արմենակ Հայկունի:

ՄՈՒՍԱՆԵՐ, *Զևսի* և *Մնեմոսինեի* դուստրերը հուն. դից–յան մեջ, աստվածուհիներ, գիտ–յունների, պոեզիայի և արվ–ների հովանավորուհիներ: Եղել են 9 Մ.՝ Եվտերպե, Կլիո, Թալիա, Մելպոմենա, Տերփսիքորա, Էրատո, Պոլիհիմնիա, Ուրանիա, Կալիոպե:

ՄՈՒՍԱՆՈՒՐ, **Մուծածիր, Արդինի**, ք–պետություն Մեծ Զաբ գետի ափին՝ Վանա լճի հվ–արլ. մասում: Առաջին անգամ հիշատակվել է Ասորեստանի *Աշուրնասիրպալ II* թագավորի արձանագրություններից մեկում (Նեմրութի կոթողին, մ. թ. ա. 879): Եղել է Վանի թագավորության (Ուրարտու) քաղ. և *Խալդի* գլխ. աստծու պաշտամունք. կենտրոնը: Ավերվել է մ. թ. ա. 714–ին՝ Ասորեստանի Սարգոն II արքայի հրամանով:

ՄՈՒՍԵՍ ՈՒՍՏԱ, **Մովսես Զուղայեցի**, XVII դ–ի ճարտ.: Ըստ շին. արձանագրության՝ 1634–ին Փիլիպոս կաթողիկոսի հրամանով կառուցել է եկեղեցի Արցախ նահնգ–ի Փառիսոս ք–ի ավերակներից հս–արմ.՝ Զակամ գետի մոտակայքում՝ Մեծ Ղարա Մուրադ գյուղատեղիում:

ՄՈՒՍԹԱՖԻՆ Գաբիդեն (1902–1985), ղազախ գրող: Ղազախստանի ժող. գրող (1984): Ղազախ. ԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1958): Հեղինակ է «Կյանք կամ մահ» (1941), «Շիգանակ» (1945), «Կարագանդա» (1952), «Ականատեսը» (մաս 1, 1963) և այլ վեպերի, «Միլիոնատեր» (1948) վիպակի, նաև պատմվածքների:

Ղազախ. ԽՍՀ Աբայ Կունանբաևի անվ. Պետ. մրց. (1953):

ՄՈՒՍԻԵՐԻ, բրոնզի–երկաթիդարյան դամբարանադաշտ (տարածքը՝ գրեթե 6 *հա*) ՀՀ–ում՝ Ալավերդի ք–ից 3 *կմ* հս (Մուհի դաշտ կոչված վայրում): 1888–ին պեղումներ է կատարել Ժ. Ժ. դը *Մորգանը*: Ամենաուշ շրջանի նյութերը սկյութ. տիպի նետասլաքներ են (մ. թ. ա. VII–VI դդ.):

ՄՈՒՍԻՆԱՔ (Moussinac) Լեոն (1890–1964), ֆրանսիացի գրող, թատերագետ: Դիմադրության շարժման մասնակից: Հեղինակ է «Առանց մտածելու» (1931), «Է. Ժ. Կուդերկի հիշատակարանը» (1947), «Արգելված ցույց» (1935), «Շան դը Մռե» (1945) վեպերի, ««Մեդուզա» լաստանավի վրա: Քաղաքական բանտարկյալի օրագիրը» (1945) ինքնակենսագր. երկի, «Կինոյի ծնունդը» (1925), «Խորհրդային կինոն» (1928), «Վերգեյ Էյզենշտեյն» (1964) կինոարվ–ի, «Նոր միտումներ թատրոնում» (1931), «Թատրոնը՝ իր ակունքներից մինչև մեր օրերը» (1957) թատերարվ–ի մասին աշխ–ների:

ՄՈՒՍԻՆՅԱՆՑ Գուրգեն Մկրտչի (1895–1967), մեխանիկոս–կոնստրուկտոր: Տեխ. գիտ. դ–ր (1940), պրոֆ. (1938): ՌԽՖՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1946): Ստեղծել և կատարելագործել է չափիչ և աերոդինամիկ. սարքեր, լավագույն աերոդինամիկ. կշեռքը (1940)՝ Ա. Ն. Տուպոլևի աերոդինամիկ. խողովակի համար:

ԽՍՀՄ Պետ. (1946), Ն. Ե. Ժուկովսկու անվ. (1940) մրց–ներ, Լենինի (2), ՀՄՊ 1–ին աստիճանի (1945), Կարմիր աստղի, Աշխ. կարմիր դրոշի շքանշաններ:

ՄՈՒՍԽԵԼԻՇՎԻԼԻ Նիկոլոզ Իվանեի (1891–1976), վրացի մաթեմատիկոս և մեխանիկոս: ՎԽՍՀ ԳԱ ակադ. (1941, նախագահ՝ 1941–72–ին, պատվ. նախագահ՝ 1972–ից), ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939): Սոց. աշխ. հերոս (1945): Աշխ–ները վերաբերում են առաձգականության տեսությանը, ինտեգրալ հավասարումներին և անալիտիկ ֆունկցիաների տեսության սահման. խնդիրներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1947):

ՄՈՒՍԿԱՐԻՆ, ալկալոիդ, կարմիր ճանճասպան սնկի հիմն. թունավոր նյութը: Առաջացնում է մարդկանց ծանր թունավորումներ, դանդաղեցնում է սրտի աշխ–ը, արագացնում թքի, արցունքի, քրտինքի արտազատումը, նեղացնում է բբերը ևն:

ՄՈՒՍԿՈՎԻՏ, շերտավոր սիլիկատնափրի ենթադասի միներալ՝ $KAl_2[AlSi_3O_{10}](OH,F)_2$: Բաց շագանակագույն է, կանաչավուն: Կարծր.՝ 2–3, խտ.՝ 2,8–2,9 *գ/սմ*^{3}: Խոշորաբյուրեղ Մ. դիէլեկտրիկ է, օգտագործվում է էլեկտրատեխնիկայում, փոշիացած Մ.՝ արդ. շինանյութերում և էլեկտրամեկուսաթղթերում:

ՄՈՒՍՈՅԱՆ Վիդոկ Խաչիկի (1938–2009), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1988): Ստեղծել է էքստրեմալ խնդիրներ լուծելու «ծնված երկօրթոգոնալ համակարգերի մեթոդը», նկարագրել սահմանափակ ցուցիչներով էքսպոնենտ. բազման–

դամներով կիսառանցքի վրա երկրչփ. պրոգրեսիայի արագությամբ մոտարկվող ֆունկցիաների դասը: Էքսպոնենտների ոչ լրիվ համակարգից ծնված երկօրթոգոնալ վերլուծությունների համար կառուցել է համընդհ. գումարման մեթոդ:

ՄՈՒՍՈՐԳՍԿԻ Մոդեստ Պետրովիչ (1839–1881), ռուս կոմպոզիտոր: Հեղինակ է օպերաների («Բորիս Գոդունով», 1869, 2-րդ խմբագրությունը՝ 1872, ևն), երաժշտ. դրամաների («Սորոչինյան տոնավաճառ», 1874–80, ավարտել է Ց. Ա. Կյուին, «Խովանշչինա», 1872–80, ավարտել է Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովը, ևն), «Գիշերը լերկ լեռան վրա» (1867) սիմֆ. պատկերի, «Պատկերներ ցուցահանդեսից» դաշնամուր. սյուիտի (1874), «Առանց արևի» (1874), «Մահվան երգեր և պարեր» (1875–77) վոկալ շարքերի, «Կալիստրատ», «Երյոմուշկայի օրորոցայինը», «Որբուկը», «Սենինարիստ» և այլ երգերի ու ռոմանսների:

ՄՈՒՍՍՈԼԻՆԻ (Mussolini) Բենիտո (1883–1945), Իտալիայի ֆաշիստ. կուս-յան հիմնադիրը (1919) և ֆաշիստ. կառ-յան ղեկ-ը (1922–43): Իրականացնելով «Հռոմի հոդված» (1922) գործողությունը՝ Մ. զավթել է իշխանությունը (1922): Երկրում հաստատել է ֆաշիստ. ահաբեկչ. վարչակարգ, վարել ագրեսիվ արտաքին քաղ-յուն (1936-ին նվաճել է Եթովպիան, 1939-ին՝ Ալբանիան, ևն), հիտլերյան Գերմանիայի հետ սանձազերծել է ԵՀՊ-ն: 1945-ին իտալացի պարտիզանները մահապատժի են ենթարկել:

ՄՈՒՍՍՈՆՆԵՐ (ֆրանս.՝ mousson, < արաբ. մաուսիմ – սեզոն), սեզոն. կայուն քամիներ երկրագնդի որոշ մարզերում, որոնք տարին 2 անգամ փոխում են իրենց ուղղությունը (դառնում են հակադիր կամ հակադիրին մոտ): Ձմեռ. Մ. հաճախ ուղղված են ցամաքից օվկ. (մայրցամաք. Մ.), իսկ ամառայինը՝ օվկ-ից ցամաք (օվկիանոս. Մ.): Մուսսոն. կլիմայի հիմն. առանձնահատկությունն ամառ. առատ տեղումներն են և չոր ձմեռը: Մ. լավ արտահայտված են արևադարձ. լայն-յուններում, գլխավորապես՝ Հնդ. օվկ-ի ավազանում: Լինում են նաև արտաարևադարձ. Մ. (Հեռավոր Արևելքում):

ՄՈՒՍՏԱՆԳ (անգլ. mustang), վայրենացած ընտանի ձի: Տարածված էր Հս. Ամերիկայի տափաստաններում: Անցյալում որսացել են՝ միս, կաշի ստանալու համար: Գրեթե ոչնչացված է:

ՄՈՒՍՏԻԵՐՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ, *մուստիերյան դարաշրջան, միջին քարի դարում* հիմնականում մոտ 300–30 հզ. տարի առաջ: Կոչվել է Լը Մուստիե (Le Mostier) քարայրի անունով (Ֆրանսիայի Դորդոն դեպարտամենտ), որտեղ առանձնացվել է այն: Կրողներն են *նեանդերթալյան մարդը* և Homo sapiens-ը (բանական մարդ): Մ. մ-ին բնորոշ են սկավառակաձև քարե միջուկները: Հայկ. լ-աշխարհում հայտնի են Մ. մ-ի Արտին լ-ան (Սատանի դար, Արեգունի և Հվ. բլուրներ), Հրազդանի միջին հոսանքի (Արզնի, Նուռնուս, Ջրաբեր Ֆանտան, Թեժրաբեկ, Ճաթոդան) և այլ կայաններ:

ՄՈՒՍՈՒՊՈՎ Գաբիտ (1902–1985), ղազախ գրող: Ղազախ. ԽՍՀ ԳԱ ակադ. (1958): Սոց. աշխ. հերոս (1974): Հեղինակ է «Ջինվորը Ղազախստանից» (1949), «Արթնացած երկրամաս» (1953), «Նրա անունը Ուլպան է» (1976) վեպերի, «Մեկ անգամ և ողջ կյանքի համար» (1967), «Հաղթանակածը» (1975) վիպակների ու պատմվածքների ժող-ների, նաև պիեսների:

ՄՈՒՏԱՑԻԱՆԵՐ, *մուտագեններ*, ֆիզ. և քիմ. գործոններ, որոնք առաջացնում են ժառանգ. փոփոխություններ (մուտացիաներ): Մուտածին ազդեցությամբ օժտված են իոնացնող և ԱՄ ճառագայթները, տարբեր բնական (կոլխիցին) և արհեստականորեն ստացված (ազոտական թթու, միզանյութի նիտրոզոածանացյալներ ևն) քիմ. միացությունները: Մ. օգտագործում են գենետիկ. փորձարկումների և ընտրասերման մեջ՝ նոր սորտեր, գծեր, շտամներ ստանալու համար:

Մարդու օրգանիզմ թափանցելու դեպքում Մ. կարող են հանգեցնել չարորակ ուռուցքների առաջացման: Ուստի բազմաթիվ երկրներում ստուգվում են բոլոր նոր քիմ. միացությունները (դեղապատրաստուկներ, կենցաղ. քիմիայի նյութեր ևն), նաև հսկողություն է սահմանվում շրջակա միջավայրում Մ-ի առկայության վրա:

ՄՈՒՏԱՆՏՆԵՐ, մուտածնության արդյունքում առաջացած օրգանիզմներ, որոնք ելակետային (վայրի) տիպից տարբերվում են ժառանգ. շեղումներով:

ՄՈՒՏԱՑԻԱՆԵՐ (< լատ. mutatio – փոփոխություն, փոխարինում), օրգանիզմի ժառանգ. հատկանիշների բնականորեն կամ արհեստականորեն առաջացրած փոփոխությունները, որոնք տեղի են ունենում օրգանիզմի գենետիկ. նյութում (քրոմոսոմներում և գեներում)՝ ժառանգ. նյութի վերակառուցման կամ խանգարման հետևանքով: Մ. կենդանի բնության մեջ ժառանգ. փոփոխականության հիմքն է:

ՄՈՒՏԱՑԻՈՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, առաջացել է *մուտացիաների* բացահայտման արդյունքում: Մ. տ-յան համաձայն (ռուս. գիտնական Ս. Ի. *Կուժինակի*, 1899, նիդեռլանդացի, Հ. դե Ֆրիզ, 1901–03)՝ կտրուկ, հանկարծակի մուտացիաները էվոլյուցիայի որոշիչ գործոններն են, որոնք միանգամից հանգեցնում են նոր տեսակների առաջացման, իսկ բնական ընտրությանը հատկացվել է օժանդակ դեր: Գենետիկայի և դարվինիզմի հետագա համադրմամբ (1920–30) բացահայտվել է, որ էվոլյուցիան կարող է տեղի ունենալ միայն մուտացիաների արհեստ. ընտրության ճանապարհով:

ՄՈՒՐ (Moore) Էդուարդ (1712–1757), անգլիացի գրող: Հեղինակ է քաղքենիական դրամայի ժանրով «Ընկեցիկ երեխան» (1748), «Ժիլ Բլազ» (1751, հիմքում՝ դրվագ Ա. Ռ. Լեսաժի համանուն վեպից), «Խաղացողը» (1753) պիեսների:

ՄՈՒՐ Թոմաս (1779–1852), իռլանդացի բանաստեղծ, կոմպոզիտոր: «Իռլանդական մելոդիներ» (1808–34) ժող-ում երգել է իռլանդացիների ազատագր. պայքարը: Հեղինակ է «Լալլա Ռուք» (1817) «արևելյան» ռոմանտիկ. պոեմի, «Ժողովուրդների երգեր» (1818–27) շարքի, «Երեկոյան ղողանջ» հայտնի երգի և այլ գործերի: Հրատարակել է «Լորդ Բայրոնի նամակներն ու օրագրերը՝ նրա կյանքին վերաբերող դատողություններով» (1830) աշխ-ը, որտեղ զետեղված են նաև Բայրոնի ու հայերի կապերին վերաբերող մի շարք նամակներ, Հ. Ավգերյանի կազմած հայ-անգլ. քերակ-յան դասագրքի համար Բայրոնի գրած հայտնի առաջաբանը հայերի ու Հայաստանի մասին:

ՄՈՒՐ Հենրի (1898–1986), անգլիացի քանդ.: Կերտել է կենսականորեն որոշակի («Մայրը և երեխան», 1943–44, «Ընտանիք», 1945–49), նաև հավաստի, վերաց. կամ երևակայական կերպարներ («Թագավորը և թագուհին», 1952–53):

ՄՈՒՐ Ջորջ Էդուարդ (1873–1958), անգլիացի փիլ.: Մեծ Բրիտանիայի ակադ-ի անդամ (1918-ից): «Բանականություն» (անգլ.) ամսագրի խմբ. (1921–47): Հիմնավորել է նեոռեալիզմը («Իդեալիզմի հերքումը», 1903), մշակել է տրամաբ. վերլուծության մեթոդը, բարոյագիտ-յան մեջ հարել է ինտուիտիվիզմին:

ՄՈՒՐ Սթանֆորդ (1913–1982), ամերիկացի կենսաքիմիկոս: Աշխ-ները վերաբերում են սպիտակուցների քիմիային (Ու. Հ. *Սթայնի* հետ): Կիրառել է իոնափոխանակ. քրոմատագրությունը՝ սպիտակուցների վերլուծության համար, հորինել է ամինաթթվային վերլուծիչ: Հաստատել է (1960) ենթաստամոքսագեղձ. ռիբոնուկլեազ ֆերմենտի առաջնային կառուցվածքը:

Նոբելյան մրց. (1972, Ու. Հ. Սթայնի հետ):

ՄՈՒՐԱԴ, XVII դ-ի ճարտ.: Իր ուսուցչի՝ *Սահակ Հիզանեցու* մահից (1667) հետո շարունակել և ավարտել է (1669) նրա սկսած՝ *Մուղնու Սուրբ Գևորգ վանքի* եկեղեցու շին-յունը:

ՄՈՒՐԱԴ ՍԵԲԱՍՏԱՑԻ (Խրիմյան Մուրադ Գևորգի, 1874–1918), ազգ-ազատագր. շարժման գործիչ, ֆիդայի: 1903-ին Թորգոմի «Մրրիկ» հեծելախմբի կազմում անցել է Սասուն, ղեկ. մասնակցություն ունեցել Սասունի 1904-ի ինքնապաշտպյանը: 1916-ին Երզնկայում *Մեպուհի* հետ ձեռնարկել է «Մեկ հայ, մեկ ոսկի» հիմնադրամը: 1918-ին, Կովկասյան ճակատի քայքայումից հետո, գլխավորել է Երզնկայի մարտերը, կազմակերպել տեղի հայության գաղթ-նահանջը: Բաքվում մասնակցել է ինքնապաշտպ. կռիվներին (հայկ. զորամասի ջոկատի պետ) և զոհվել:

ՄՈՒՐԱԴԵԼԻ Վանո (Հովհաննես) Եղիայի (1908–1970), կոմպոզիտոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1968): 1939–48-ին՝ ԽՍՀՄ երաժշտ. ֆոնդի նախագահ: Հեղինակ է «Մեծ բարեկամություն» (1947), «Հոկտեմբեր» (1962) օպերաների, «Մոսկվա–Փարիզ–Մոսկվա» (1968) օպերետի, սիմֆոնիաների (1938, 1945), երգերի ևն:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1946,1951), Լենինի, Աշխ. կարմիր դրոշի շքանշաններ:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Աբգար Գուրգենի (ծ.1944), կլառնետահար: ՀՀ վաստ. արտիստ (1985): ԵՊԿ պրոֆ. (2004): 1966–90-ին՝ Հեռուստառադիոյի սիմֆ., 1990–92-ին՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբերի կլառնետների խմբի կոնցերտմայստեր: Հայ արդի կոմպոզիտորների որոշ երկերի առաջին կատարողը:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Աբրահամ Մուրադի (1833–1903), տպագրիչ-հրտ., խմբ.: 1850-ին Նիկոմեդիայում ձեռք է բերել փայտե փոքր մամուլ և կապարե տառեր, խմբագրել և հրատարակել է «Հայրենասէր» լրագիրը: 1859-ին տեղափոխվել է Փարիզ, 1860–63-ին հրատարակել է «Փարիզ» պարբ-ը: 1863-ին՝ «Մեղու» (Կ. Պոլիս) հանդեսի խմբ-տնօրեն, 1865-ին՝ «Արմաւենի» (Կահիրե) թերթի խմբ.:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Անդրանիկ (Անդրեյ) Հակոբի (1911–1943), լեյտ.: ԽՄ հերոս (1943): Հերոսի կոչման արժանացել է սեպտ-ին (1943) իր վաշտով Դնեպրի գետանցման և նրա աջ ափին հենակետ գրավելու համար:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Ատոմ Ժորայի (ծ. 1947), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1991), պրոֆ.

(1999): Հայտնաբերել է (Վ.Իլիկ *Հարությունյանի* հետ) լուս. կանգուն ալիքի դաշտում ատոմի կոհերենտ դիֆրակցիայի երևույթն ու հաշվել դրա իմպուլս. բաշխման տեսքը, ցույց է տվել, որ խորացող բազմակի պոտենցիալ. հորերում գազի Բոզե–Էյնշտեյնյան կոնդենսացման ջերմաստիճանն իջնում է՝ ձգտելով զրոյի:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Արմեն Աբգարի (ծ. 1972), ուրոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (2005), պրոֆ. (2005): 2014–16–ին՝ ՀՀ ԱՆ նախարար: 2017–ից՝ ԵՊԲՀ ռեկտոր: Աշխ–ները վերաբերում են ուրոլոգ. հիվանդություններով մարդկանց (հատկապես՝ քաղցկեղով հիվանդ տարեց տղամարդկանց) կյանքի որակը լավացնելու խնդիրներին և բուժման արդյունավետ եղանակների մշակմանը: ԵՊԲՀ ոսկե մեդալ (2005):

ՄՈՒՐԱԴՅԱՆ Բագրատ (Բաղդասար) Գևորգի (1987–1958), դերասան: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1931): 1902–19–ին խաղացել է Թիֆլիսի, Բաքվի (նաև 1933–40–ին) հայոց մշակութ. միության խմբերում, 1924–32–ին և 1945–48–ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ., 1933–40–ին՝ Բաքվի հայկ. թատրոններում, 1940–45–ին՝ ԵՊՀԹ–ում:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Բադալ Հմայակի (1915–1991), կուս–պետ. աշխատող, ճարտարագետ: 1966–72–ին՝ ՀԽՍՀ ՆԽ նախագահ: 1957–61–ին՝ Երևանի քիմ. գործարանի տնօրեն խրա անմիջ. մասնակցությամբ Հայաստանում (նաև ԽՍՀՄ–ում) ներդրվել է նաիրիտ–կաուչուկի ստացման անընդհատ պոլիմերման եղանակը: 1976–81–ին՝ «Նաիրիտ» ԳԱՄ–ի գլխ. տնօրեն: 1981–ից՝ ՀԽՍՀ պետպլանի նախագահի տեղակալ: Լենինի շքանշան:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Գարեգին Գրիգորի, **Մելքիսեդեկ արքեպիսկոպոս** (1836–1903), եկեղեց. գործիչ, մանկավարժ: «*Միոն*» ամսագրի խմբ.: 1869–ին ձեռնադրվել է վրդ., 1897–ին՝ եպս.: 1877–ին ընտրվել է Զմյուռնիայի հայոց հոգևոր վիճակի առաջնորդը: 1898–ին վերընտրվել է: 1885–ին ընտրվել է Ամենայն հայոց կաթողիկոս: Հեղինակ է «Պետրոս Շանշեանց» (1898), «Պատմութիւն քրիստոնեական եկեղեցւոյ» (1898) և այլ աշխ–ների, կատարել է թարգմ–յուններ:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Գոհար Սարգսի (ծ. 1957), բանասեր, թարգմանիչ: Բանասիր. գիտ. դ–ր (2005): Սարգիս *Մուրադյանի* դուստրը, Արամ *Թոփչյանի* կինը: Հեղինակ է «Հունաբանությունները դասական հայերենում» (2010), «Յուցակ Վիեննայի Մխիթարեան մատենադարանի հայերէն ձեռագրերի պատառիկների» (համահեղ., հայ–անգլ., 2012) աշխ–ների: Կազմել է Մովսես Խորենացու «Գիրք պիտոյից» (1993, գրաբարից ռուս. է թարգմանել 2000–ին) երկը: Թարգմ–յուններ է արել լատ–ից, անգլ–ից, հին հուն–ից:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Դավիթ Էդուարդի (ծ. 1950), գրող, կինոգետ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2011): Պրոֆ. (2007): 2014–ից՝ ԵՊԿՊԻ ռեկտոր: 2008–10–ին՝ ՀՀ մշակույթի փոխնախարար: Հեղինակ է «Սովորական հերթապահություն» (1990) կարճամետրաժ և վավերագր. («Իմ Կոմիտասը», 1987, «Ֆրանց Վերֆել», 1990, «Խաղաղ հոգու թագավորություն», 2003, ևն) ֆիլմերի սցենարների, «Ուզում եմ քեզ պատմել» (1976), «Հրաժեշտ» (1994), «Եվրոպան անիվների վրա» (ռուս., 2002), «Մեր հին դաշնամուրը» (2003), «Ժառանգության իրավունք» (2005) և այլ գրքերի:

ՀԳՄ Լ. Շանթի անվ. (2003), «Ոսկե գրիչ» (2006), ՀԹԳՄ «Արտավազդ» մրց–ներ:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Զատիկ Համբարձումի (ծ. 1930), աստղաֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1965): Ռումինիայի ԳԱ ակադ. (1994): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (2008): Աշխ–ները վերաբերում են Արեգակի ֆիզիկային, մասնավորապես՝ գունոլորտից արևապակի նյութի արտահոսքին (արևային քամի), տաքանալիս հրվիժակների անհետացմանը: Նրա բացահայտած «Մուրադյանի էֆեկտը» թույլ է տալիս շառավղ. արագությունների միջոցով բացահայտել Արեգակի վերին շերտերում ընթացող երևույթները:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Զարեհ Մուրադի (1913–1979), բալետի արտիստ, բալետմայստեր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1961): 1935–38–ին՝ Սոկվայի Մեծ թատրոնի, 1938–57–ին՝ ԵՕԲԹ–ի մենապարող (Ավետ, Կարեն՝ Ա. Խաչատրյանի «Երջանկություն», «Գայանե», Նուրալի՝ Բ. Վ. Ասաֆևի «Բախչիսարայի շատրվանը»), 1955–61–ին՝ գլխ. բալետմայստեր (Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ», 1954, Է. Հովհաննիսյանի «Մարմար», 1957, Իլյա *Արթպտովի* հետ):

ՄՈՒՐԱԴՅԱՆ Լաուրա Գուրգենի (ծ. 1940), գրականագետ, խմբ.: Բանասիր. գիտ. դ–ր (1992), պրոֆ. (2003): 2002–ից՝ ԵԹՊԻ «*Հանդես*» պարբ–ի հիմնադիր–խմբ.: Հեղինակ է «Վրթանես Փափազյանը գրականության պատմաբան և քննադատ» (1976), «Արփիար Արփիարյան: Կյանքը և ստեղծագործությունը» (1991), համահեղ.՝ «Հայ քննադատության պատմություն» (հ. 2, 1997), «Հայ վեպի պատմություն» (2006) աշխ–ների: Կազմել է Րաֆֆու երկերի ժող–ի 11–րդ (1991) և 12–րդ (1999) հատորները, «Հայ քննադատական մտքի պատմության մատենագիտություն»–ը (1987):

ՄՈՒՐԱԴՅԱՆ Լևոն Հայրիկի (ծ. 1959), թավջութակահար: Հայրիկ *Մուրադյանի* թոռը: 1990–ից՝ Լիսաբոնի «Կյուլպենկյան» սիմֆ. նվագախմբի կոնցերտմայստեր, «Solistas» լար. քառյակի թավջութակահար:

Համամիութ. (1981, Թբիլիսի, 3–րդ մրց.), Պ. Կազալսի (1985, Բուդապեշտ, 2–րդ մրց.), Ջ. Կարդոնալի (1997, Պորտուգալիա, 1–ին մրց.) անվ. միջազգ. մրցույթների դափնեկիր:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Կարապետ Մուրադի (ծ. 1938), երկրաբան: Երկրբ–ինքբ. գիտ. դ–ր (1987), պրոֆ. (1989): Աշխ–ները վերաբերում են Հայաստանի, Փոքր Կովկասի, Հայկ. լ–աշխարհի օգտ. հանածոների հանքավայրերի առաջացման և տեղաբաշխման երկրադինամիկ. օրինաչափություններին, ինահրաբխականությանը, բնօգտագործման և բնապահպանության հարցերին:

Հանքավայրերի ծագումնաբան. միջազգ. ընկերակցության (1991), ՌԲՆԳԱ (2001) անդամ:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Կիմ Սամբրեի (1938–1991), հայագետ–բյուզանդագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1986): Պարույր *Մուրադյանի* եղբայրը: Հեղինակ է «Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրյան» հայ մատենագրության մեջ» (1976), «Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ» (1983), «Բարսեղ Կեսարացի. «Յաղագս Վեցաւրեայ արարչութեան»» (1984), «Գրիգոր Նյուսացին հայ մատենագրության մեջ» (1993) և այլ աշխ–ների: Հետազոտել է Կորյունի, Եզնիկ Կողբացու, Եղիշեի, Մովսես Խորենացու, Անանիա Շիրակացու, Հովհան Օձնեցու երկերի աղբյուրներն ու բացահայտել աղերսները բյուզ. մատենագրության հետ:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Կլեր (Սեդա, ծ. 1951), պատմաբան: Աշխ–ները (հիմնականում՝ ֆրանս.) վերաբերում են խորհրդա–թուրք. հարաբերություններին և Հայկ. հարցին, Հայաստանին («Ստալինից մինչև Գորբաչով. խորհրդային մեկ հանրապետության պատմությունը. Հայաստան», ֆրանս., 1990), 1946–62–ի հայրենադարձությանը:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Հայրիկ Մանուկի (1905–1999), երգիչ–բանահավաք, ազգագրագետ: Լևոն *Մուրադյանի* պապը: «Վան», «Զարթո՛նք», «Զվարթո՛նք» ազգագր. խմբերի հիմնադիր–ղեկ–ը: Մ–ի կատարմամբ պահպանվել է շուրջ 200 երգ՝ «Հայրենի՛ք երգեր» ժող–ում (1980), «Աշխարհի ժողովուրդների ֆոլկլորը» սկավառակների անթոլոգիայում (1971, Փարիզ), կինոյի և թատրոնի երաժշտ. ձևավորումներում: Գրել է նաև հայ ազատագր. պայքարի և հերոսամարտերին նվիրված գործեր: ՀՄՊ և «Պատվո նշան» շքանշաններ: Դստեր՝ **Մարո Մ–ի** (1933–1987) ջանքերով 1980–ին հիմնադրվել է «Ակունք» ազգագր. խումբը: 1937–ին բռնադատվել է՝ որպես Ա. Խանջյանի դրածո:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Հենրիկ Վահանի (ծ. 1938), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1975): Աշխ–ները վերաբերում են նեյտրոններով գրգռվող մակարդակների և նեյտրոն. ուժ. ֆունկցիաների առանձնահատկություններին: Զևակերպել է նեյտրոն. ռեզոնանսների վիճակագր. օրինաչափությունները, ստեղծել նեյտրոն. կտրվածքների և ռեզոնանսների հետազոտման նոր եղանակ:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Հովհաննես (ծ. թ. անհտ–1915), վրդ., ազգ–ազատագր. շարժման գործիչ: Եղել է *Մշո Սուրբ Առաքելոց վանքի* վանահայրը: Բազմիցս ղեկավարել է վանքի պաշտպ–յունը քրդերի և թուրքերի հարձակումներից: Մ–ին են աշակերտել *Արաբոն*, *Գևորգ Չավուշը* և ուր.:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Հովհաննես Ավետիքի (1940–2005), քանդ.: Հեղինակ է «Զորավար Անդրանիկ» (1978), «Գևորգ Չավուշ» (1983), «Աղբյուր Սերոբ» (1984) քանդակաշարի, «Հավերժություն» (1982), «Գևորգ Չաուշ» (1990, Արտաշատ), «Զորավար Անդրանիկ» (1991, ՀՀ Սյունիքի մարզի Անզեղակոթ գ.) մոնումենտալ հուշարձանների, «Հեթանոսական մոտիվ» (1984), «Հրեշտակ» (1995) խորհրդանշ. կերտվածքների ևն:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Հովհաննես Դավթի (1920–1986), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ–ր (1974), պրոֆ. (1983): Հեղինակ է «Կարճևանի բարբառը» (1960), «Կաքավաբերդի բարբառը» (1967), «Հայոց լեզվի պատմական քերականություն» (հ. 1, 1982), համահեղ.՝ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» (1972) աշխ–ների:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Հրայր Բենիամինի (1907–1964), գրականագետ, դրամատուրգ: Բանասիր. գիտ. դ–ր (1963): Հեղինակ է «Պողոյանի կյանքը» (1937), «Դերենիկ Դեմիրճյան» (1961), «Գրաքննադատական ակնարկներ» (1965) և այլ աշխ–ների, «Հավերժության ուղևորը» (1947, բեմ.՝ 1956, «Խաչատուր Աբովյան» վերնագրով) դրամայի, «Սայաթ–Նովա» (1963) կինովիպակի և այլ գործերի:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Հրաչյա Տիգրանի (1917–2006), նյարդախտաբան, գյուտարար: Բժշկ. գիտ. դ–ր (1969), պրոֆ. (1971):

Առաջինն է տվել քլորոպրենով և գրա-նուզանով թունավորումների ժամանակ նյարդ. համակարգի ախտահարման կլինիկ. ձևերի դասակարգումը:

Նյու Յորքի ԳԱ (1995), Նյարդաբան-ների եվրոպ. ընկերակցության (1994) անդամ:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Մաթևոս Հովհաննեսի (1911–1987), երաժշտագետ: Արվեստագիտ. դ-ր (1972): ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1967): Հեղինակ է «Քրիստափոր Կարա-Մուրզա» (1950), «Խորհրդային Հայաստանի երաժշտական մշակույթը» (ռուս., 1957) և այլ աշխ-ների:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Մանուկ Նորիկի (1955–2013), հեռուստալրագրող, խմբ.: 2011–13-ին՝ *«Հոգևոր հայրենիք»* ամսաթերթի գլխ. խմբ.: Հեղինակ է «Տանիքի վրա» (1987), «Հոգին հոգով՝ հիշատակ» (2014) բանաստեղծությունների ժող-ների, «Վասպուրականի հեքիաթները» (2006, 2012) ժող-ի, «Ուսուբ բեկ» (2012) պատ-մավավերագր. երկի:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Մարգո (Մարգարիտ) Գրի-գորի (1927–2016), դերասանուհի: ՀՀ ժող. արտիստ (1978): Ջիմ *Թորոսյանի* կինը: 1949-ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասանուհի (Կորդելիա՝ Վ. Շեքսպիրի «Լիր արքա», Ագլայա՝ «Ապու-շը»՝ ըստ Ֆ. Մ. Դոստոևսկու, Նուշիկ՝ Ժ. Անանյանի «Իմ տունը քո տունը չէ», ևն), խաղացել է նաև հեռուստաներկայա-ցումներում, նկարահանվել է կինոյում («Շրթներկ № 4», 1964, «Սպիտակ ափեր», 1975, «Եվ կրկնվելու է ամեն ինչ...», 1989, բոլորը՝ Հայֆիլմ):

ՄՈՒՐԱԴՅԱՆ Մաքսիմ Հրաչի (ծ. 1950), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1998), պրոֆ. (2004): Աշխ-ները վերա-բերում են ճառագայթման տեղափոխ-ման մաթ. մոդելներին: Աշակել է ուղիղ և հակադարձ խնդիրների լուծման մի շարք վերլուծ. և թվային մեթոդներ:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Միքայել Ազատի (1941–2012), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (2001), պրոֆ. (2002): Աշխ-ները վերա-բերում են Ռուսաստանի արտաքին քաղ-յանը, հայ-ռուս. առնչություններին, Հայկ. հարցին ու Հայոց ցեղասպանությանը:

ԽՍՀՄ Կարմիր դրոշի, Կարմիր աստ-ղի (2), ՀՄՊ 1-ին և 2-րդ աստիճանների շքանշաններ:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Միքայել Արտեմի (1921–1993), խորհրդ. բանակի գեն-մայոր (1965): ՀՄՊ-ի ժամանակ (1943-ից) կոչվել է *Թամանյան դիվիզիայի* կազմում: 1961–80-ին՝ ՀԽՍՀ քաղաքաց. պաշտպ-յան շտաբի պետ: Կազմակերպել ու ղեկավարել է ՀՄՊ-ի հաշմանդամների հանրապետ. միությունը: Հայագիտ-յան համար նշանակալի երևույթ է «Վրաց ժամանակագրության» հին վրաց-ից Մ-ի թարգմանությունն ու հրատարակումը հայ., ինչպես նաև «Armenia – Georgica» մատենաշարով հրատարակված նրա մենագրությունները:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Նշան Հակոբի (1908–1982), գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1977): Հեղինակ է «Միքայել Նալբանդ-յան» (1954), «Հովհաննես Հովհաննիսյանի արվեստը» (1964), «Աբովյանի պոետի-կան» (1979), «Շեքսպիրի կյանքը» (հրտ.՝ 1986) և այլ աշխ-ների:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Պարույր Սամբրեի (1933–2011), արևելագետ, հայագետ-կովկա-սագետ: Պատմ. գիտ. դ-ր (1986), պրոֆ. (1989): Կիմ *Մուրադյանի* եղբայրը: Հեղի-նակ է «Սայաթ-Նովան ըստ վրացական աղբյուրների» (1963), «Հայաստանի վրա-ցերեն արձանագրությունները...» (1977), «Մուրը Շուշանիկի վկայաբանությունը. Բնագրեր և հետազոտություն» (1996) և այլ աշխ-ների: Կազմել և խմբագրել է «Կովկաս և Բյուզանդիա», «Հայագի-տական տպագրությունները», «Հայագի-տական մատենադարան», «Հուշարձան» մատենաշարերը, մի շարք հայագետների մենագրություններ:

ՀԽՍՀ ԳԱ Մեսրոպ Մաշտոցի անվ. մրց. (1989):

ՄՈՒՐԱԴՅԱՆ Ռուդոլֆ Մուրադի (ծ. 1936), ֆիզիկոս-տեսաբան: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1970): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. ան-դամ՝ 1986-ից): Աշխ-ները վերաբերում են տարր. մասնիկների տեսությանը, տիեզերածնության և մաթ. ֆիզիկայի խնդիրներին: Առաջադրել է մասշտաբ. ինվարիանտության վարկածը բարձր էներգիաների ֆիզիկայում, որից, մաս-նավորապես, բխում է քվարկ. հաշվի բա-նաձևը: Առաջադրել է տիեզերածնության վարկած՝ ըստ Վիկտոր *Համբարձումյանի* տիեզերածնության տեսության: ԽՍՀՄ Լենինյան մրց. (1988):

ՄՈՒՐԱԴՅԱՆ Սամվել Պարգևի (ծ. 1945), գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1995), պրոֆ. (2003): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2014): Հեղինակ է «Հարություն Սուրխաթյան» (1988), «Երվանդ Օտ-յան: Կյանքը և գործը» (1996), «Գրական հանգրվաններ» (գիրք 1, 2, 2003, 2007), «Հովհաննես Շիրազ: Բանաստեղծը: Մար-դը» (2012) և այլ աշխ-ների: Հրատարակել է Հովհաննես Շիրազի անտիպ գործերից:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Սարգիս Սամբրեի (1927–2007), նկարիչ: ՀՀ ժող. նկարիչ (1978): Պրոֆ. (1981): ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1972): ՌԴ գեղարվ-ի ակադ-ի թղթ. ան-դամ (1983): Գոհար *Մուրադյանի* հայրը: 1982–87-ին՝ ՀՆՄ նախագահ: Մ. առա-ջիններից է անդրադարձել Մեծ եղեռնի («Վերջին գիշերը: Կոմիտաս», 1956, «Կոմիտաս, 1915 թվականի ապրիլ», 1965) և հայ ժողդ-ի պատմ. անցյալի («Սար-դարապատի հերոսամարտ», եռապատ-կեր, 1977) թեմաներին: Հեղինակ է նաև «Գարունը լեռներում» (1960), «Անտունի» (1969), «Խաղաղ երկնքի տակ» (1971), «Սպիտակ ծառեր» (1976), «Անհանգիստ գիշեր» («Պարույր Սևակ», 1985) և այլ գործերի:

ԽՍՀՄ Պետ. (1976), ՌԴ նկարիչների միության 2-րդ (1995) մրց-ներ:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Սուրեն Ստեփանի (ծ. 1930), բանաստեղծ, մանկագիր: Հեղինակ է «Վարդեր և փշեր» (1972), «Չափածո հե-քիաթներ» (2003), «Մանկական պիեսներ» (2009), «Ես սիրում եմ քեզ, հայրենիք» (2011), «Իմ վերջին կանգառը» (2014), «Ուրախ հատընտիր» (2015) բանաստեղ-ծությունների, հեքիաթների, հանելուկնե-րի, «Մեծերն իմ կյանքում» (2007), «Մի երկար, լուսաբար ճանապարհ» (2012) հուշերի, գր. դիմանկարների ժող-ների, նաև մանկ. երգերի տեքստերի:

ՀԳՄ Մ. Զորյանի (1993), Ե. Չարենցի (2000) անվ., ԹՄՄ Վ. Թեքեյանի անվ. (2011) մրց-ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2007), Ֆրիտյոֆ Նանսեն հիմնա-դրամի ոսկե հուշամեդալ (2010):

ՄՈՒՐԱԴՅԱՆ Վազգեն Գրիգորի (ծ. 1921), կոմպոզիտոր, ջութակահար: Պրոֆ. (1948): Գևորգ *Էմինի* եղբայրը: 1950-ից՝ ԱՄՆ-ում, հանդես է եկել որպես մե-նակատար: Հեղինակ է սիմֆոնիաների, կոնցերտների (տարբեր գործիքների համար), սյուիտների, սոնատների, վոկալ շարքերի (Վ. Շեքսպիրի, Յ. Վ. Գյոթեի, Ա. Դանտեի, Վ. Հյուգոյի տեքստերով), երգե-րի, խմբերգերի: ԹՄՄ Վ. Թեքեյանի անվ. մրց. (1962, Բեյրութ):

ՄՏԿԿ «Սր Մեսրոպ Մաշտոց» շքան-շան (1996):

ՄՈՒՐԱԴՅԱՆ Վարդան Հակոբի (ծ. 1925), ճարտարագետ-տեխնոլոգ: Տեխ. գիտ. դ-ր (1992): ՀՃԱ թղթ. անդամ (1999): Աշխ-ները վերաբերում են քլորոպրենի ստացմանը, տեխնոլոգ. շարժընթացների անվտանգ շահագործմանը, ավտոմա-տացմանը, բնության պահպանության և աշխ. անվտանգության հարցերին:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Վիկտոր Ասլանի (1913–2003), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1969): Աշխ-ները վերաբերում են ԽՄԿԿ ազգ. քաղ-յանը ՀՄՊ-ի տարիներին և հետպատերազմյան շրջանում:

ԽՍՀՄ Կարմիր դրոշի, ՀՄՊ 2-րդ աս-տիճանի, Կարմիր աստղի շքանշաններ:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Տարոն Արտավազդի (ծ. 1961), նկարիչ: Հեղինակ է «Հուդիթ» (1991), «Նանե» (1993), «Պյուռոսյան հաղթա-նակ» (2000), «Զինորսի երազը», «Սա-տիր», «Մենամարտ» (երեքն էլ՝ 2003), «Ս. Գևորգ» (2004) և այլ կոմպոզիցիաների: Փարիզի Մեծ պալատի «Մերժվածների սալոնի» անդամ (1993-ից):

ՄՈՒՐԱԴՈՎԱ Բարիաթ Սոլթան Մեջի-դովնա (1914–2001), կումիկ դերասա-նուհի: Դաղստանի ԽՍՀ (1935), ԽՍՀՄ (1960) ժող. արտիստ: 1930-ից՝ կումիկ. երաժշտադրամատիկ. թատրոնի (Մա-խաչկալա) դերասանուհի (Սուսան՝ Շիր-վանզադեի «Նամուս», Կիստամա՝ Ա. Սալավաթովի «Կարմիր պարտիզաններ», Ժիվկա՝ Բ. Նուշիչի «Տիկին մինիստրու-հի», ևն):

ՌԽՖՍՀ Պետ. մրց. Կ. Ս. Ստանիսլավ-սկու անվ. (1972):

ՄՈՒՐԱԴՈՎԱ Սոնա (1914–1997), թուրք-մեն դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1955): 1934-ից՝ Թուրքմ. դրամայի թատ-րոնի դերասանուհի (1955–60-ին՝ տնօրեն):

ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ՄՈՒՐԱԴՍԱՀ, լ-գագաթ Թեքասարի լ-շղթայում՝ ՀՀ Վայոց ձորի մարզում՝ Ձերմուկ ք-ից հս-արմ.: Բարձր.՝ 3214 *մ*: Լանդշաֆտը լ-մարզագետնային է:

ՄՈՒՐԱԿԱՄԻ Հարուկի (ծ. 1949), ճապո-նացի գրող: Հեղինակ է «Ոչխարների որս» (1982), «Նորվեգական անտառ» (1987, կինոնկար՝ 2010), «Լարովի թռչնի քրոնիկոնները» (1994), «Կաֆկան՝ լո-ղափին» (2002) պոստմոդեռնիստ., նաև «Գետնանցում» (1999) Տոկիոյի մետրո-յի ահաբեկչության մասին վավերագր., «Կեսգիշերից հետո» (2004, հայ.՝ 2010) վեպերի և այլ գործերի:

ՄՈՒՐԱՍԱԿԻ ՄԻԿԻԲՈՒ (մոտ 978–մոտ 1016), ճապոնացի գրող, պալատ. տիկին: «Գենջի մոնոհաթարի» («Ասք Գենջիի մա-սին», մոտ 1001–06) կենցաղ. վեպը ճապոն. դաս. արձակի գլուխգործոցն է, մինչև XX դ. այն մեծ ազդեցություն է թողել ազգ. գրկ-յան վրա: Հեղինակ է նաև «Մուրա-սակի Սիկիբուի օրագիրը» (մոտ 1010) հուշագրության, բանաստեղծությունների:

ՄՈՒՐԱՎՅՈՎ Նիկոլայ Նիկոլաևիչ (1794–1866), ռուս պետ. և ռազմ. գործիչ, հե-

տևազորի գեն. (1853)։ Կողմնակից էր ճորտատիրության վերացմանը, հովանավորել է աքսորյալ դեկաբրիստներին։ 1854–ից՝ Կովկասի փոխարքա և առանձին Կովկաս. կորպուսի հրամ.։ Ղրիմի պատերազմի ժամանակ (1853–56) գլխավորել է Կարսի բերդի պաշարումն ու գրավումը (1855, որի համար ստացել է **Մ–Կարսկի** պատվանունը)։

ՄՈՒՐԱՏՈՎ, Պավել Պավլովիչ (1881–1950), ռուս գրող, արվեստագետ։ 1922–ից՝ վտարանդի։ Հեղինակ է «Իտալիայի կերպարները» (հ. 1–2, 1911–12, հ. 3, հրտ.՝ 1924) գրքի, «Հերոսներ և հերոսուհիներ» (1918), «Կախարդական պատմվածքներ» (1922) պատմվածքների ժող–ների, «Էգերիա» (1922) վեպի, նաև Էսսեների շարքերի (այդ թվում՝ «Հակաարվեստ», 1924) և այլ գործերի։

ՄՈՒՐԱՏՈՎ, Վալերի Իվանովիչ (1928–2006), ռուս մարզիկ (մարզ. մարմնամարզություն)։ ԽՍՀՄ ս. վ. վ. (1952)։ Օլիմպ. խաղերի քառակի (1952, 1956), աշխարհի (1954, 1958), ԽՍՀՄ բազմակի (1950–56) չեմպիոն՝ առանձին ձևերում և թիմ. մրցումներում։ Աշխարհի (1954) և ԽՍՀՄ (1953, 1956) բացարձակ չեմպիոն։

ՄՈՒՐԱՏՈՎԱ, Կիրա Գեորգևնա (ծ. 1934), ռուս. կինոռեժ.։ Ուկր. ԽՍՀ ժող. արտիստ (1990)։ Նկարահանել է «Կարճատև հանդիպումներ» (1968), «Երկարատև հրաժեշտ» (1972, էկրանին՝ 1987–ից), «Սխրագույն քարերի մեջ» (1983), «Ասթենիկ սինդրոմ» (1990), «Զգայուն ոստիկանը» (1992), «Հափշտակություններ» (1994), «Երեք պատմություն» (1997), «Չեխովյան մոտիվներ» (2002), «Մեղեդի երգեհոնիկի համար» (2009) և այլ ֆիլմեր։

ՄՈՒՐԱՏ–ՌԱՓԱՅԵԼՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ, հիմնադրվել է Վենետիկում 1836–ին՝ Մխիթարյանների նախաձեռնությամբ և Էդվարդ Ռափայելի Ղահրամանյանի ջանքերով։ Սկզբում կոչվել է Ռափայելյան, 1870–ին միավորվել է ***Սամվել Մուրատյան վարժարանի*** հետ, կոչվել Մուրատ–Ռափայելյան։ 1929–ին առանձնացվել են, բայց անվանումը մնացել է նույնը։ ԵՀՊ–ի ժամանակ փակվել է, վերաբացվել է 1950–ին։ Սկզբն. շրջանում գործել է գիմնազիայի ծրագրով։ 1867–ին՝ Ֆրանսիայի, 1879–ին Իտալիայի կառ–յունները շնորհել են լիցեյի կարգավիճակ։ Դիշերօթիկ էր՝ 2 միջնակարգ, 3 բարձրագույն դասարաններով։ Ուսման տևողությունը՝ 5 տարի։ Շրջանավարտներն առանց քննության կարող էին ընդունվել Եվրոպայի և ԱՄՆ–ի համալսարաններ։ Ուներ գրադարան, թանգարան։ 1991–ից վարժարանում սովորել են նաև հայաստանցի պատանիներ։ Փակվել է 1998–ին՝ նյութ. սղության պատճառով։

ՄՈՒՐԱՏՅԱՆ (Տեր–Հովհաննիսյան Գրիգոր, 1854–1908), գրող։ Շրջագայել է Արցախում և Սյունիքում, գրել «Հասան Զալալեան ազգի համառօտ տոհմագրութիւնը» (1880) երկը։ Ճանաչվել է «Ռուզան կամ Հայրենասէր օրիորդ» (1900) պատմ. դրամայով։ Հեղինակ է նաև «Հասարակաց որդեգիրը» (1884), «Հարուստները զուարճանում են» (1884), «Ինչ լայեղ է» (1885), «Անպատճառ իշխանուհի» (1886) պատմվածքների, «Անդրեաս երէց» (1897–98) պատմավեպի։ «Գևորգ Մարզպետունի» (1896) պատմավեպում արտացոլել է Բագրատունիների հայկ. թագավորության շրջանի իրադարձությունները։ Մ. ազգապահպանության հիմքը համարել է եկեղեցին, ընտանիքը, ազգ. սովորույթները ու բարքերը («Հայ բողոքականի ընտանիքը», 1882, «Իմ կաթոլիկ հարսնացուն», 1885, «Չհաս է», 1886)։ Ըստ Մ–ի՝ ազգի զարգացման համար հարկավոր են անձնազոհ անհատներ՝ առաքյալներ («Խորհրդավոր միանձնուհի», 1889, «Լուսաւորութեան կենտրոնը», 1892, «Նոյի ագռաւը», 1899, «Առաքեալը», 1902, «Գթութեան քոյրեր», 1902)։

ՄՈՒՐԱՅՅԱՆ, Մարացյան, Մուրացան, նախարար. տոհմ Հին Հայաստանում։ Հիշատակվում են մ. թ. ա. III–II դդ–ում։ Ընդարձակ կալվածքներ են ունեցել Երասխի գետահովիտներում՝ Նախճավանում, Մարաց կողմերում։ Սահակ Պարթևի գահնամակում զբաղեցրել են նախավերջին՝ 69–րդ տեղը։

ՄՈՒՐԳԱԲ, գետ Աֆղանստանում և Թուրքմենստանում։ Երկ.՝ 978 *մ*, ավազանը՝ 46,9 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը միջին հոսանքում՝ 52 *մ*^{3}/*վ*։ Մարի ք–ի մոտ հատում է Կարակումի ջրանցքը։

ՄՈՒՐԳՈՒԼԵՍԿՈՒ (Murgulescu) Իլիե (1902–1991), ռումին քիմիկոս։ Ռումինիայի ԳԱ ակադ. (1952, նախագահ՝ 1963–66–ին), ԽՍՀՄ ԳԱ արտ. թղթ. անդամ (1966)։ Աշխ–ները վերաբերում են ֆիզքիմիայի և վերլուծ. քիմիայի խնդիրներին։ ՌՍՀ Պետ. մրց. (1963)։

ՄՈՒՐԴՈՒԿՅԱՆ, **Մուրդուգով**, Ալեքսանդր Հովսեփի (1912–2007), փոխգնդ. (1959)։ ԽՄ հերոս (1945)։ Հերոսի կոչման արժանացել է Բեռլինի գրոհի ժամանակ (1945) ցուցաբերած անձն. խիզախության համար։ Զորացրվել է 1960–ին։

ՄՈՒՐԶԱ Գեորգի Ստեփանի (1910–1994), ճարտ.։ ՀՀ վաստ. շինարար (1965)։ Մասնակցել է Երևանի 1951 և 1971–ի գլխ. հատակագծերի կենտր. մասի հատակագծման և կառուցապատման նախագծի (համամիութ. մրցույթի 1–ին մրց.) մշակմանը։ Հեղինակ է Լենինականի գլխ. հատակագծի (1939–40), ՀՀ ԳԱԱ բուսաբ. այգու հատակագծերի։

ՄՈՒՐԶԱԼԵՎ Էդվարդ Մակարի (1908–1998), աշխարհագետ։ Աշխարհագր. գիտ. դ–ր (1949), պրոֆ. (1956)։ ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1970)։ Աշխ–ները վերաբերում են չորային տարածքների լանդշաֆտագիտ–յան պատմության, երկրագիտ–յան, աշխարհագր. անվանումների ծագման, Ասիայի աշխարհագր. հետազոտությունների պատմության ու աշխարհագր. տերմինաբանության հարցերին։ Բնախույզների «Լեոպոլդինա» գերմ. ակադ–ի անդամ (1961)։ Մոնղոլիայի ԳԱ պատվ. պրոֆ.։ Պետ. (1951) և ԽՍՀՄ ԳԱ նախագահության Վ. Օբրուչևի անվ. (1963) մրց–ներ, ԽՍՀՄ Ռուս. աշխարհագր. ընկ–յան Ն. Մ. Պրժևալսկու անվ. ոսկե (1947), Գերմանիայի ԳԱ Ա. Հումբոլդտի անվ. (1959) մեդալներ։

ՄՈՒՐԻԼԻՈ (Murillo) Բարտոլոմե Էստեբան (1618–1682), իսպանացի գեղանկարիչ։ Սևիլիայի գեղարվ–ի ակադ–ի հիմնադիր–նախագահ (1660)։ Ստեղծել է կրոն. թեմաներով պատկերներ («Հանգիստ Եգիպտոսի ճանապարհին», 1665–70), որտեղ իդեալականացված և զգացմունք. կերպարներն օժտված են մեղմ քնարականությամբ, երբեմն՝ հումորով («Մուրացիկ տղան», 1645–55)։

ՄՈՒՐԾԱ (Barbus mursa), **մուրծի**, ծածանաձկների ընտանիքի ձուկ։ ՀՀ գետերում հազվադեպ է հանդիպում։ Միջին չափի ձուկ է։ Մարմինը գլանաձև է, երկ.՝ 25–30 (երբեմն՝ մինչև 40 և ավելի) *սմ*, կ. զ.՝ մինչև 1 *կգ* և ավելի։ Վարում է մերձհատակ. կենսաձև։ Ունի բարձր համային հատկանիշներ, սակայն փոքրաթվության պատճառով արդ. նշանակություն չունի։ Սիրող. ձկնորսության ձուկ է։

ՄՈՒՐՀԱԿ, սահմանված ձևի պարտավորագիր, որը՝նրա տիրոջը (մուրհակատեր) իրավունք է տալիս ժամկետը լրանալուց հետո պարտապանից պահանջել նշված դրամ. գումարի վճարումը։ Ներկայում Մ. միջազգ. առևտրում օգտագործվող հաշվարկների և վարկավորման կարևոր գործարքներից է։ Տարբերում են պարզ և փոխանցելի Մ–ներ։ Մուրհակ. պահանջների վերաբերյալ սահմանված են հայցային վաղեմության ժամկետներ։

ՄՈՒՐՃ, 1. ձեռքի փայտե կոթավոր գործիք մեխ խփելու, զնդանի վրա զանազան իրեր ծեծելու համար։ 2. Հարված. գործողության մեթենա՝ մետաղե նախապատրաստվածքը ճնշմամբ մշակելու համար։ Մ. լինում է կոման և դրոշմման, ըստ շարժաբերի տեսակի՝ շոգեօդ., օդաճնշ., մեխ., հիդրավլիկ., գազ., պայթուցիկ, էլեկտրամագնիս.։ 3. Աթլետիկայում օգտագործվող նետման մարզագույք՝ գունդ, որը պողպատալարով ամրացված է նետման բռնակին։

«ՄՈՒՐՃ», հաս–քաղ., տնտեսագիտ., գր. ամսագիր (1889–1907, Թիֆլիս)։ Հիմնադիր–խմբ.՝ Ավետիք Արասխանյան, խմբ–ներ՝ Կոստանդին Կրասիլնիկյան, Հ. Սպենդիարյան, Լևոն Սարգսյան։

«ՄՈՒՐՃ», գր. կազմ–յուն։ Հիմնադրվել է 1922–ին Երևանում՝ Ազատ ***Վշտունու*** նախաձեռնությամբ։ Ըստ «Մ.»–ականների (Ն. Զարյան, Վ. Այազան, Գ. Մահարի, Հ. Սիրաս, Գ. Վանանդեցի, Դ. Սիմոնյան, Ն. Դաբաղյան և ուր.)՝ «նոր գրկ–ը պետք է ստեղծվի բացառապես պրոլետարիատի և չքավոր խավից դուրս եկած գրողների ջանքերով, իսկ նյութը պետք է լինի բանվոր դասակարգի, գործարանային առօրյայի մասին»։ Գործել է մինչև 1923–ը, «Մ.»–ի անդամներն ընդգրկվել են ***Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայում***։

«ՄՈՒՐՃ», գր–գեղ., քննադատ. հանդես (1922–23, Երևան)։ Հայաստանի պրոլետ. գրողների պաշտոնաթերթ։ Խմբ.՝ Ազատ Վշտունի։

«ՄՈՒՐՃ ԵՒ ՄԱՆԳԱՂ», հաս–քաղ. պարբերաթերթ (1925–31, Դոնի Ռոստով)։ ՀամԿ(բ)Կ Հս. Կովկասի երկրամաս. և Դոնի կոմիտեների Հայկ. բյուրոների և Միասնիկյանի շրջխորհրդի գործկոմի պաշտոնաթերթ։ Խմբ–ներ՝ Ն. Զարգարյան, Մ. Գրիգորյան, Ա. Թումանյան, Ազատ Վշտունի, Վահան Ծովյան։

ՄՈՒՐՄԱՆՍԿ (հիմն.՝ 1916, մինչև 1917–ը՝ Մուրմանի Ռոմանով), հերոս քաղաք (1983) ՌԴ Մուրմանսկի մարզում։ Համանուն մարզի վարչ. կենտրոնը։ Ջսառչող նվինգստ՝ Բարենցի ծովի Կոլայի ծոցի արլ. ափին։ Բն.՝ 305,2 հզ. (2015)։ Զարգացած են ձկնավերամշակությունը, նավանորոգումը, շինանյութերի արդ–յունը։ Մ. Հս. ծով. ուղու գիտ. կենտրոնն է։ Մ–ում են խարսխում ռուս. ատոմ., տրալային և տրանսպորտ. տորմիղները։ Գործում են բուհեր, թատրոններ, պատկերասրահ, ռազմածով. թանգարան։

ՄՈՒՐՄԱՆՍԿԻ ՄԱՐԶ, ՌԴ հս–արմ–ում, հիմնականում՝ Կոլայի թ–կղզում՝ Հս–արմ. դաշն. օկրուգում։ Ողողվում է Բարենցի և

Սպիտակ ծովերի ջրերով: Տարածքը՝ 145 հզ. *կմ*²: Բն.՝ 305,2 հզ. (2015): Վարչ. կենտրոնը՝ ***Մուրմանսկ***: Ունի 12 քաղաք և 20 քտա: Մ. մ-ում զարգացած են գունավոր մետաղագործությունը, լեռնահանք. արդյունը և ձկնարդյունը: Գործում են էկեր, ՊՇԷԿ, ԱԷԿ, մակընթաց. էլեկտրակայան, «Ապատիտ» լեռնաքիմ., պղնձի-նիկելի, ալյումինի ևն ձեռն-ներ:

ՄՈՒՐՈԴՈՎ, Ջուրաբեկ (ծ. 1942), տաջիկ երգիչ (տենոր), կոմպոզիտոր, ռուբորահար: Տաջիկ. ԽՍՀ (1974), ԽՍՀՄ (1979) ժող. արտիստ: 1963-ից՝ Տաջիկստանի ֆիլհարմոնիայի մենակատար (երկացանկում՝ տաջիկ և այլ ժողդ-ների երգեր): Տաջիկստանի երաժշտ. ընկ-յան նախագահ (1988-ից):

Տաջ.ԿԵՄ (1975), Տաջիկ. ԽՍՀ Պետ. (1987) մրց-ներ:

ՄՈՒՐՈՄՑԵՎ, Ալեքսեյ Միխայլովիչ (1921–1987), ռուս օվկիանոսագետ: Աշխ-ները վերաբերում են Համաշխ. օվկ-ի շրջանացմանը և Խաղաղ, Հնդ. և Ատլանտ. օվկ-ների հիմն. ջրաբան. առանձնահատկություններին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1988):

ՄՈՒՐՈՄՑԵՎ, Սերգեյ Անդրեևիչ (1850–1910), ռուս իրավաբան, հրապարակախոս: Պրոֆ. (1877–84): Կադետների առաջնորդներից: Ռուսաստանի 1-ին Պետ. դումայի նախագահը (1906): Աշխ-ները վերաբերում են հռոմ. և քաղաքաց. իրավունքի, իրավունքի ընդհ. տեսության հարցերին:

ՄՈՒՐՍԻԱ, ԻՄ Իսպանիայում՝ Միջերկր. ծովի ափին: Տարածքը՝ 11,3 հզ. *կմ*², բն.՝ 1,470 մլն. (2011): Վարչ. կենտրոնը՝ ***Մուրսիա***: Կան կապարի, ցինկի, արծաթի հանքավայրեր: Զարգացած են նավաշինությունը, գունավոր մետաղագործությունը, նավթավերամշակման արդ-յունը, բուսաբուծությունը (ձիթապտուղ, ցիտրուսներ, հացահատիկ. բույսերի մշակություն), շերամապահությունը ևն:

ՄՈՒՐՍԻԱ, ք. Իսպանիայի հվ-արլ-ում: Համանուն ԻՄ-ի և պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 441,3 հզ. (2012): Բնական մետաքսի արդ-յան կենտրոն է: Ունի համալսարան: Հիմնադրվել է 825-ին: Հայտնի է Մ-ի տաճարը (XIV–XVI դդ.):

ՄՈՒՐՍԻԼԻ II, ***Խեթական թագավորության*** թագավոր՝ մ. թ. ա. 1321–1295-ին: Վերականգնել է տերության հզորությունը: Ձեռնարկել է 2 արշավանք դեպի Հայկ. լ-աշխարհ: ***Հայաասայի*** հետ կնքել է պայմանագիր, որով վերջինս պարտավորվել է զինվորներ տալ Մ. II-ին:

ՄՈՒՐՎԱԼՅԱՆ Արմենակ Արտեմի (1910–1967), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ-ր (1948): Հեղինակ է «Հայ-վրացական բառային զուգադիպումներ» (1947), «Հայերենի մասնիկները և նրանց առնչությունները վրաց և կովկասյան մյուս լեզուների հետ» (1949), «Հայոց լեզվի բառային կազմը» (1955), «Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն» (1959) աշխ-ների:

ՄՈՒՐՑ, հայկ. հեթանոս. տոմարի ամիսների 10-րդ օրվա անվանումը:

ՄՈՒՐՑ, **Մուրցամոր**, գետ Հայկ. լ-աշխարհում, Արաքսի ձախ վտակը: Սկիզբ է առնում Այծպտկունք լ-գագաթի հս. լանջից՝ մոտ 2800 *մ* բարձր-յունից: Երկ.՝ մոտ 68 *կմ*: Բասենի դաշտում միախառնվում է Արաքսին: Մսումը խառն է, վարարումը՝ գարնանը:

ՄՈՒՑԻՆՆԵՐ (լատ.՝ mucus – լորձ), ***գլիկոպրոտեիդներ***, որոնք մտնում են կենդանիների լորձաթաղանթների մածուցիկ արտազատուկի, նաև թքի, ստամոքսա- և աղիքահյութի բաղադր-յան մեջ: Ապահովում են լորձաթաղանթների խոնավությունն ու առաձգականությունը:

ՄՈՒՑՈՒՀԻՏՈ (1852–1912), Ճապոնիայի 1-ին կայսրը՝ 1867–68-ի հեղ-յան ընթացքում սյոգունության տապալումից հետո: Վախճանվելուց հետո անվանվել է Մեյձի (ճապոն. բառացի՝ լուսավորյալ կառավարում) կայսր:

ՄՈՒՔԱԴԱՍԻ (946/947–մոտ 1000), արաբ աշխարհագետ և ճանապարհորդ: Այցելել է մահմեդ. Արևելքի գրեթե բոլոր երկրները, կազմել նրանց մանրամասն նկարագրությունները, որոնք միջնադար. Արևելքի (այդ թվում՝ Միջին Ասիայի ու Այսրկովկասի) ուսումնասիրության կարևոր աղբյուր են:

ՄՈՒՔԱՆՈՎ, Սաբիթ Մուքանի (1900–1973), ղազախ գրող: Ղազախ. ԽՍՀ ԳԱ ակադ. (1954): 1936–37 և 1943–52-ին՝ Ղազախստանի ԳՄ վարչության նախագահ: Հեղինակ է «Սուլուշաշ» (1928) չափածո վեպի, «Խորհրդավոր դրոշը» (հետագա հրտ.՝ «Բոտագոզ», 1938), «Միր Դարյա» (1947–48) պատմ., «Փայլատակող ասուպ» (գիրք 1–3, 1967–70, ղազախ մտածող Չ. Վալիխանովի մասին) պատմակենսագր. վեպերի, «Կյանքի դպրոց» (1949–53) կենսագր. եռերգության:

Ղազախ. ԽՍՀ Աբայի անվ. մրց. (1967):

ՄՈՒՔԻՄԻ Մուհամմադ Ամին խոջա (1850/51–1903), ուզբեկ բանաստեղծ-լուսավորիչ: Ուզբ. գրկ-յան մեջ ռեալիզմի, նաև ուղեգրության ժանրի հիմնադիրը:

ՄՈՒՖԼՈՆ, երկկճղակավորների ընտանիքի վայրի ոչխար: ***Արխարի*** ենթատեսակ է: Հայտնի է Մ-ի 2 տեսակ՝ եվրոպ. և ասիական: Խոյերի իրանի երկ.՝ մինչև 115, մնդավի բարձր.՝ մոտ 83 *սմ*, կ. զ.՝ մոտ 50 *կգ*, աղեղնաձև եղջյուրների երկ.՝ մոտ 75 *սմ*: Բուրդը կարճ է և կոպիտ, սև կամ կարմրաշագանակագույն: Անտառալեռն. կենդանիներ են, ապրում են հոտերով: Կլիմայավարժված է Ղրիմի, եվրոպ. որոշ երկրների պայմաններին: Ասիական Մ. եվրոպականից խոշոր է (կ. զ.՝ մինչև 80 *կգ*): ՀՀ-ում հանդիպում է ***հայկական մուֆլոնը***:

ՄՈՒՖՏԻ, 1. մահմեդ. սուննի աստվածաբան, եկեղեց-իրավ. գործերի գիտակ, որը կարող է եզրակացություն (ֆետվա) տալ շարիաթի հարցերով: 2. Որևէ երկրում կամ շրջանում մուսուլման. հոգևորականության առաջնորդ:

ՄՈՒՖՈՒԼԻՐԱ (Mufulira), ք. Զամբիայում: Բն.՝ 144,3 հզ. (2013): Արդյունահանում և ձուլում են պղինձ:

Յ

Յ, հայ. այբուբենի 21-րդ տառը, անվանումը՝ յի (հի): Ունի ***գրչագիր***, ***երկաթագիր***, ***բոլորգիր***, ***շղագիր***, ***նոտրգիր*** տառատեսակները: Հայ-ի միջնալեզվային շփական պարզ ձայնորդ բաղաձայն հնչյուն (հնչույթ) է: Թվային արժեքը՝ 300:

ՅԱԲԼՈԿՈՎ-ԽՆԶՈՐՅԱՆ Ստեփան Միքոնի (1904–1996), միջատաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1964): Աշխ-ները վերաբերում են կարծրաթևների կարգաբանության, կենդանաաշխարհագրության, ձևաբանության, էկոլոգիայի խնդիրներին: Ստեղծել է կարծրաթևների դասակարգման նոր համակարգ:

ՀԽՍՀ Պետ. մրց. (1985), ՀԽՍՀ ԳԱ վաստակավոր (1985):

ՅԱԲԼՈՆՍԿԱՅԱ Տատյանա Նիլովնա (1917–2005), ուկրաինացի նկարչուհի: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1982): ԽՍՀՄ (1975), Ուկրաինայի (1997) Գեղարվ-ի ակադ-ի անդամ: Գործերից են՝ «Հաց» (1949), «Անանուն բարձունքներ» (1969), «Վուշ» (1977) ևն: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950, 1951, 1979):

ՅԱԲԼՈՆՄԿԻ Սերգեյ Վսեվոլոդովիչ (1924–1998), ռուս մաթեմատիկոս: ՌԴԱ ակադ. (1991, թղթ. անդամ՝ 1968-ից): Աշխ-ները վերաբերում են մաթ. տրամաբ-յանը և կիբեռնետիկայի մաթ. հարցերին: Լենինյան մրց. (1966):

ՅԱԲԼՈՉԿՈՎ Պավել Նիկոլաևիչ (1847–1894), ռուս էլեկտրատեխնիկ: Հայտնաբերել է (1876) առանց կարգավորիչի աղեղ. լամպը՝ էլ. մոմը («Յ-ի մոմ»), որով ստեղծել է 1-ին, գործնականում կիրառելի էլ. լուսավորության համակարգը: Ս. Պետերբուրգում հիմնադրել է էլեկտրամեխ. գործարան:

ՅԱԳԵԼԼՈՆՆԵՐ (Jagiellonowie), Լեհաստանի թագավորների (1386–1572) և Լիտվայի մեծ իշխանների (1377–1401,1440–1572) հարստություն: Իշխել են նաև Հունգարիայում (1440–44, 1490–1526), Չեխիայում (1471–1526): Հիմնադրել է Վ. Յագելլոն (1350–1434):

ՅԱԳՈԴԱ (Iagoda) Հենրիխ Գրիգորևիչ (Հենոխ Եգուդա, 1891–1938), հրեա պետ. գործիչ: 1920-ից՝ Համառուսաստան. արտակարգ հանձնաժողովի նախագահության անդամ, 1935-ին՝ ԽՍՀՄ ՊԱԿ-ի գլխ. կոմիսար, 1934–36-ին՝ ԽՍՀՄ ՆԳ, 1936–37-ին՝ Կապի ժողկոմ: Զանգված. բռնությունների գլխ. իրագործողներից: Գնդակահարվել է:

ՅԱԳՈԴԻՆ Գենադի Ալեքսեևիչ (1927–2015), ռուս. ֆիզքիմիկոս: ՌԴԱ թղթ. անդամ (1976), ՌԿԱ ակադ. (1993): ՌԴ Բարձրագույն դպրոցի վաստ. աշխատող (2013): 1985–91-ին՝ ԽՍՀՄ բարձրագույն և միջին մասնագիտ. կրթության նախարար, 1988–91-ին, միաժամանակ՝ ԽՍՀՄ ժող. կրթության պետ. կոմիտեի նախագահ: Աշխ-ները վերաբերում են հազվագյուտ մետաղների, նրանց միացությունների հեղուկ. լուծահանման քիմիային և տեխնոլոգիային:

ԽՍՀՄ Պետ. (1985), ՌԴ նախագահի (2000) մրց-ներ:

ՅԱԴՈՎ Վլադիմիր Ալեքսանդրովիչ (1929–2015), ռուս. սոցիոլոգ: ՌԴԱ սոցիոլոգիայի ինստ-ի հիմնադիր-տնօրեն (1988–2000): Աշխ-ները վերաբերում են աշխ. հարաբերություններին ԽՍՀՄ-ում և հետխորհրդ. Ռուսաստանում:

ՅԱԶ, ***ծածանաձկների*** ընտանիքի ձուկ: Երկ.՝ մոտ 70 *սմ*, կ. զ.՝ 8 *կգ*: Ապրում է Եվրասիայի գետերում՝ Ռետնից մինչև Լենա: Արդյունագործ. և մարզ. որսի ձուկ է:

ՅԱԶԳՈՒԼԵՄԻ ԼԵՌՆԱՇԼԹԱ, Արմ. Պամիրում՝ Տաջիկստանում: Բարձր.՝ 6974 *մ*: Կան սառցադաշտեր (ընդհ. տարածքը՝ մոտ 4384 *կմ*²):

ՅԱԶԸՃՅԱՆ Գևորգ Գրիգորի (ծ. 1961), խմբ., մատենագետ: 1988–89-ին՝ «Երկաթե շերեփ», 1990–92-ին՝ «Սադա Արարատ» (արաբ.), 1990–94-ին՝ «Սփիւռք» (երեքն էլ՝ Բեյրութ), 2004-ին՝ «Շրջադարձ» (Երևան) պարբ-ների խմբ.: Հեղինակ է հայ պարբ. մամուլի վերաբերյալ մատենագիտ. և պատմագիտ. աշխ-ների:

ՅԱԶԻՋՅԱՆ Դավիթ Միսակի (1915–1983), կրտսեր լեյտ.: ԽՄ հերոս (1945): 1939–40-ին մասնակցել է Արմ. Ուկրաինայի, Արմ. Բելոռուսիայի ազատագրմանը, Խորհրդա-ֆինն. պատերազմին: Հերոսի կոչման արժանացել է Լեհաստանի Կոստիշին քաղաքի համար մղված մարտերում ցուցաբերած սխրագործությունների համար:

ՅԱԶՈՎ Դմիտրի Տիմոֆեևիչ (ծ. 1924), ԽՍՀՄ մարշալ (1990): 1980-ից՝ Միջին-ասիական զորքերի, 1984-ից՝ Հեռավորարև. ԶՕ հրամ.: 1987–91-ին՝ ԽՍՀՄ պաշտպանության նախարար: 1991-ին՝ հակագորբաչովյան խռովությանը (ԳԿՉՊ) մասնակցելու համար դատապարտվել է: Կալանքից ազատվել է 1994-ին՝ համաներմամբ:

ՅԱԹԱՂԱՆ (թուրք.՝ yatagan), կեռ, կարճ թուր Մերձ. և Միջին Արևելքի ժողդ-ների մոտ (հայտնի է XVI դ-ից): Հայտնի է որպես թուրք janիչերիների զենք:

ՅԱԼԹԱ, ք. (1837-ից) Ղրիմում: Նվինգատ՝ Սև ծովի ափին՝ Սիմֆերոպոլի երկթղ. կայարանից 79 *կմ* հվ: Մերձծով. կլիմ. առողջավայր է, Ղրիմի հվ. ափի առողջարան. գոտու կենտրոնը: Բն.՝ 77 հգ. (2015): Գործում են 2 թատրոն, Ա. Պ. Չեխովի տուն-թանգարանը ևն: Հայտնի է 1145-ից՝ Զալիտա անունով:

Յ-ում հայերը հաստատվել են XII դ-ում: 1916-ին կառուցվել է Սբ Հռիփսիմե եկեղեցին: 1990–91-ին հայերի թիվն ստվարացել է: Գործում են կիրակնօրյա հայկ. դպրոց, եկեղեցի և Ղրիմահայոց ընկ-յան տեղ. բաժանմունքը: Յ-ում են ապրել Ալեքսանդր Սպենդիարյանը և Վարդգես Սուրենյանցը:

ՅԱԼԹԱՅԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ, տես ***Ղրիմի խորհրդաժողով 1945***:

ՅԱԼՈՒ (Yalow) Ռոզալին Սասմեն (1921–2011), ամերիկացի ֆիզիկոս և բժիշկ: Աշակել է արյան մեջ ինսուլինի որոշման ճառագայթաիմունաբան. մեթոդ: Նոբելյան մրց. (1977):

ՅԱԼՏՐՅԱՆ Արմենակ Վարդերեսի (1914–1999), ըմբիշ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1951), վ. մ. (1956): Ազատ (1945–52) և հունա-հոռմ. (1938–40, 1946–48) ոճերի ըմբշամարտի ԽՍՀՄ չեմպիոն:

ՅԱԼՈՒՆՑՅԱՆ, գետ Չինաստանում, Յանցզիի ձախ վտակը: Երկ.՝ 1324 *կմ*, ավազանը՝ 144 հգ. *կմ*², ջրի միջին ծախսը՝ 2000 *մ*³/*վ*: Հիմնականում հոսում է Սինո-Տիբեթյան լ-ներով: Հարուստ է ջրաէներգետիկ. պաշարներով:

ՅԱԼՈՒՅՋՅԱՆ, **Յալու** (չին.), **Ամնոկկան** (կորեերեն), գետ Չինաստանի և Կորեայի ԺԴՀ միջև: Երկ.՝ 813 *կմ*, ավազանը՝ 63 հգ. *կմ*², ջրի միջին ծախսը՝ մոտ 900 *մ*³/*վ*: Սկիզբ է առնում Պեկտուսան հրաբխից, թափվում է Դեղին ծով: Կան ջրամբար, ջրէկ:

ՅԱԽԻՆ Ռուստեմ Մուհամետ-Հազեևի (1921–1993), թաթար կոմպոզիտոր, դաշնակահար: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1970): ՌԽՖՍՀ (1981), ԽՍՀՄ (1986) ժող. արտիստ: Հեղինակ է թաթար. առաջին դաշնամուր. կոնցերտի (1951), կամերգործիք. անսամբլների, երգերի, ռոմանսների և այլ գործերի:

Թաթար. ԻԽՍՀ Պետ. մրց. (1959):

ՅԱԽՈՆՏՈՎ Վլադիմիր Նիկոլաևիչ (1899–1945), ռուս դերասան, գեղ. խոսքի վարպետ: 1924–26-ին՝ Մոսկվայի Վ. Մեյերհոլդի անվ. թատրոնի դերասան: 1927-ին հիմնադրել է «Սովրեմեննիկ» (Ե. Ե. Պոպովայի և Ս. Ի. Վլադիմիրսկու հետ) մեկ դերասանի էստրադ. թատրոնը (գործել է մինչև 1935-ը): Խաղացել է մոնոներկայացումներ՝ իր հեղինակած սցենարներով («Պուշկին», 1926, «Մայակովսկու երեկոներ», 1931, Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս», 1932, ևն):

ՅԱԽՏ (հոլ.՝ jacht), ջր. մարզաձևերի և զբոսանքների համար նախատեսված առագաստավոր, առագաստաշարժիչավոր կամ շարժիչավոր նավակ:

ՅԱԿ, սնամեջ եղջերավորների ընտանիքի որոճող կենդանիների սեռ: Պահպանվել են Տիբեթում: Ասիայի բարձրլեռն. շրջաններում ընտանի Յ. բուծում են որպես բանող, մասամբ՝ կաթնատու կենդանի: Միջին տարեկան կաթնատվությունը 300–350 *կգ* է, կաթի յուղայնությունը՝ 6–7 %:

ՅԱԿԻՄՈՎ, Ալեքսանդր Պետրովիչ (1914–2009), ԽՍՀՄ վաստ. փորձարկող օդաչու (1960), գնդ.: ԽՄ հերոս (1967): Փորձարկել է Լա–5, տուրբոպտուտակ. Տու–114 և այլ ինքնաթիռներ:

ՅԱԿԻՄՈՎԱ–ԴԻԿՈՎՍԿԱՅԱ, Աննա Վասիլևնա (1856–1942), ռուս նարոդնիկ: *Ալեքսանդր II*-ի նկատմամբ մահափորձի մասնակից: 1882–ին դատապարտվել է ցմահ տաժանակրության: 1904–ին փախել է: 1905–ից՝ էսէռ:

ՅԱԿԻՐ Իոնա Էմանուիլովիչ (1896–1937), խորհրդ. բանակի I կարգի հրամ. (1935): Ռուսաստանում քաղաքաց. պատերազմի ժամանակ եղել է բանակի ՌՀԽ անդամ, 45–րդ դիվիզիայի, 12–րդ բանակի հվ. խմբի (1919), Հվ–արմ. ռազմաճակատի մի շարք զորախմբերի (1920) հրամ.: Բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ՅԱԿՈԲ (Jakob) Լյուդվիգ Հենրիխ ֆոն (1759–1827), գերմանացի փիլ., տնտեսագետ, պատմաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ անդամ (1810): Աշխ–ները վերաբերում են տրամաբ–յանը, քերակ–յանը, հոգեբ–յանը, քաղ. տնտ–յանը և իրավունքին: Հեղինակ է «Համընդհանուր կրոն» (1801) աշխ–յան:

ՅԱԿՈԲԻ (Jacobi) Բորիս Սեմյոնովիչ (Մորից Գերման, 1801–1874), գերմանացի ֆիզիկոս և էլեկտրամեխանիկոս (ծագումով՝ հրեա): Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1847): Կ. Գ. Յ. *Յակոբիի* եղբայրը: 1837–ից՝ Ռուսաստանում: Հայտնագործել է էլեկտրաշարժիչը (1834) և փորձարկել այն՝ նավը շարժման մեջ դնելու համար (1838): Ստեղծել է գալվանատեխնիկան (1838), հեռագր. ապարատի մի քանի տեսակներ (1840–50): Հետազոտել է էլեկտրամագնիսները (Է. Խ. *Լենցի* հետ):

ՅԱԿՈԲԻ Կառլ Գուստավ Յակոբ (1804–1851), գերմանացի մաթեմատիկոս (ծագումով՝ հրեա): Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1833): Բ. Ս. *Յակոբիի* եղբայրը: Աշխ–ները վերաբերում են վարիացիոն հաշվին, մաթ. վերլուծությանը, դիֆերենցիալ հավասարումներին, տես. մեխանիկային:

ՅԱԿՈԲԻ Վալերի Իվանովիչ (1834–1902), ռուս. գեղանկարիչ: Ռուսաստանի գեղարվ–ի կայսեր. ակադ–ի անդամ (1883): Ռուս նկարիչներից առաջինն է անդրադարձել տաժանավայրի և աքսորի թեմաներին («Կալանավորների դադարը», 1861), ավելի ուշ ակադեմիզմի ոգով ստեղծել է պատմ. կոմպոզիցիաներ («Հարսանիք Սառցե տանը», 1878):

ՅԱԿՈԲԻ Ֆրիդրիխ Հենրիխ (1743–1819), գերմանացի գրող, փիլ.: Բավարիայի ԳԱ նախագահ (1807–12): Երիտասարդ տարիքում առնչվել է Գ. Է. Լեսինգի և Յ. Վ. Գյոթեի հետ: Հեղինակ է «Էդուարդ Ալվիլիայի նամակներից» (1775–76) և «Վոլդեմար» (1779) փիլ. վեպերի: Զարգացրել է «զգացմունքների և հավատքների փիլիսոփայությունը»:

ՅԱԿՈԲԻՆՅԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱ, Ֆրանս. մեծ հեղ–յան (XVIII դ.) բարձրակետը, հեղ–դեմոկրատ. իշխանություն: Հաստատվել է 1793–ի մայիսի 31–հունիսի 2–ի ժող. ապստամբության արդյունքում, երբ իշխանության գլուխ են անցել *յակոբինյանները*: Օրենսդիր և գործադիր իշխանությունը կենտրոնացվել է Կոնվենտի և նրա կոմիտեների ձեռքում: Հողը վերադարձվել է գյուղացիությանը, սկսվել է հեղ. ահաբեկչություն: Ստեղծվել է ազգ. բանակ, տապալվել է Տերմիդորյան հեղաշրջման (1794–ի հուլիսի 27–28) հետևանքով, ղեկ–ները մահապատժի են ենթարկվել:

ՅԱԿՈԲԻՆՅԱՆՆԵՐ, Ֆրանս. մեծ հեղ–յան ժամանակ (XVIII դ.) այսպես կոչված Յակոբինյան ակումբում միավորված անդամները: Առաջնորդներն էին Մ. *Ռոբեսպիերը*, Ժ. Պ. *Մարատը*, Ժ. *Դանտոնը*, Լ. Ա. *Սեն–Ժյուստը* և ուր.: *Յակոբինյան դիկտատուրայի* ժամանակ տրոհվել են աջ Յ–ի (դանտոնականներ), ձախ Յ–ի (Պ. Գ. Շոմետ, Ժ. Ռ. Էբեր և ուր.), որոնցից 1793–94–ին առանձնացել են էբերականները: Յ–ի հիմն. միջուկը համախմբվել է Ռոբեսպիերի շուրջը, որոնք ընդդիմադիր խմբավորումների դեմ պայքարել են անգամ նրանց առաջնորդներին գլխատելով: Տերմիդորյան հեղաշրջումով (1794–ի հուլիսի 27–28) տապալվել է Յ–ի իշխանությունը:

ՅԱԿՈԲՈՎԻՉ Յակոբ Մելքոնի (1879–1959), ռումինահայ վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1905): Ռումինիայի վաստ. բժիշկ (1954): Ռում. վիրաբուժ. դպրոցի և բժշկ. ակադ–ի հիմնադիրներից: 1934–ին Բուխարեստում հիմնել է շտապ վիրաբուժ. օգնության առաջին հիվանդանոցը: Փարիզի վիրաբուժ. ակադ–ի, Ֆրանս. վիրաբուժ. ընկ–յան պատվ. նախագահ և այլ ընկ–ների պատվ. անդամ:

ՅԱԿՈԲՍԵՆ (Jacobsen) Առնե (1902–1971), դանիացի ճարտ., դիզայներ: Հեղինակ է ֆունկցիոնալիզմի ոգով կառույցների (Դանիայի ազգ. բանկ, 1971, Կոպենհագեն, ևն), կահույքի նրբագեղ և զուսպ նմուշների («Կարապ–բազկաթոռ», 1958, ևն):

ՅԱԿՈԲՍԵՆ Մարիա (1882–1960), դանիացի միսիոներուհի, բարոնուհի: Մեծ եղեռնի ժամանակ Կ. Պոլսում, ապա՝ Խարբերդում, Մալաթիայում, Այնթապում տարագիր հայերի համար կազմակերպել ապաստարաններ, հիվանդանոցներ: Միայն Խարբերդում Յ–ի ջանքերով փրկվել են շուրջ 25 հզ. հայ երեխաներ: 1919–ին վերադարձել է Դանիա, ապա մեկնել ԱՄՆ, Հայոց ցեղասպանության մասին դասախոսություններով հանդես է եկել տարբեր քաղաքներում: 1922–ին գործունեություն է ծավալել Լիբանանում, Սայդայում բացել է «Թոչնոց բույն» որբանոց–վարժարանը, որը 1928–ին տեղափոխել է Բեյրութին մերձակա Ջիբեյլ ավանը և ցկյանս տնօրինել այն: Լույս է տեսել Յ–ի «Օրագրություն. 1907–1919» (հայ.՝ 1979, 2004) հուշագրությունը, որտեղ Հայոց ցեղասպանությունը փաստող ականատեսի վկայություններ են: 2011–ին Յ–ի շիրմահողով սափոր է ամփոփվել Մեծ եղեռնի հուշահամալիրի հուշապատում:

Դանիայի թագավորության ոսկե մեդալ (1950), Լիբանանի Կառ–յան Պատվո ոսկե շքանշան (1950):

ՅԱԿՈԲՍՈՆ Անատոլի Լեոպոլդովիչ (1906–1984), ռուս. հնագետ, արվ–ի պատմաբան: 1936–ին մասնակցել է Ամբերդի պեղումներին, 1946–48–ին չափագրել է Հայաստանի մի շարք պատմ. հուշարձաններ և հրատարակել է Տեղերի, Տաթևի, Խորակերտի, Գանձասարի և այլ վանքերին նվիրված աշխ–ներ:

ՅԱԿՈԲՍՈՆ (Jakobson) Ավգուստ (1904–1963), էստոնացի գրող: Էստ. ԽՍՀ ժող. գրող (1947): Սոցիալ–հոգեբ. վեպերում, այդ թվում՝ «Աղքատ մեղավորների ավանը» (1927), «Անդրուկոնների տոհմը» (հ. 1–3, 1931–34), «Հավերժական էստոնացիներ» (հ. 1–4, 1937–40), նաև վիպակներում ու պատմվածքներում քննադատել է ազգայնական միտումները: Հեղինակ է նաև «Կյանքը միջնաբերդում», «Պայքար առանց ռազմաճակատի գծի» (երկուսն էլ՝ 1946), «Շնագայլեր» (1951) պիեսների, «Փոթորկոտ հանգույցներ» (հ. 1–2, 1962) դրամատիկ ժամանակագրության և այլ գործերի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1947, 1948):

ՅԱԿՈԲՍՈՆ Լեոնիդ Վենիամինովիչ (1904–1975), ռուս. բալետի հրեա արտիստ, բալետմայստեր: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1957): «Խորեոգրաֆիկ մանրապատկերներ» անսամբլի (1969) հիմնադիր–գեղ. ղեկ.: 1933–42–ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մենապարող, 1942–75–ին (ընդհատումներով)՝ Լենինգրադի ՕԲԹ–ի բալետմայստեր (Ա. Խաչատրյանի «Սպարտակ», 1956, Բ. Ի. Տիշչենկոյի «Տաններկուսը», 1964, ևն):

ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ՅԱԿՈԲՍՈՆ Կառլ Ռոբերտ (1841–1882), էստոնացի գրող, հաս. գործիչ: Էստոնիայի գրողների ընկ–յան հիմնադիրը (1872, 1881–ից՝ նախագահ): Հեղինակ է «Դաշտային ծաղիկներ» (1866), «Սոխակը՝ Էմայիգայի ափից» (1867) բանաստեղծությունների ժող–ների և այլ գործերի:

ՅԱԿՈՊՈ ԴԵԼԼԱ ՔՎԵՐՉԱ (Jacopo della Quercia, մոտ 1374–1438), Վաղ Վերածննդի շրջանի իտալացի քանդ.: Արվ–ին բնորոշ են կերպարների դրամատիզմը, մոնումենտալությունը և լակոնիկ ձևերը (Բոլոնիայի Սան Պետրոնիո եկեղեցու շքամուտքի քանդակները, 1425–38):

ՅԱԿՈՊՈՆԵ ԴԱ ՏՈԴԻ (Jacopone da Todi), *Յակոպո Բենեդետտի* (մոտ 1230–1306), իտալացի բանաստեղծ: Հեղինակ է հոգևոր երգերի, կրոնամիստիկ. բանաստեղծությունների (իտալ.), օրհներգերի (լատ.), հակակղեր. երգիծ. բանաստեղծությունների:

ՅԱԿՈՎԼԵՎ, Ալեքսանդր Նիկոլաևիչ (1923–2005), ռուս քաղ. գործիչ, դիվանագետ: ՌԳԱ ակադ. (1990): 1973–83–ին՝ Կանադայում ԽՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան, 1983–85–ին՝ ԽՍՀՄ ԳԱ համաշխ. տնտեսագիտ–յան և միջազգ. հարաբերությունների ինստ–ի տնօրեն, 1986–90–ին՝ ԽՄԿԿ ԿԿ քարտուղար: 1995–2000–ին՝ Ռուսաստանի ս–դ. կուսյան նախագահ:

ՅԱԿՈՎԼԵՎ, Ալեքսանդր Սերգեևիչ (1906–1989), ռուս ավիակոնստրուկտոր, ավիացիայի գեն–գնդ. (1946): ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1976): Սոց. աշխ. հերոս (1940, 1957): Յ–ի ղեկավարությամբ ստեղծվել են ինքնաթիռների բազմաթիվ տիպեր՝ մխոց. (Յակ–1, –3 ևն) և ռեակտիվ (Յակ–15, –28 ևն) կործանիչներ, ռեակտիվ մարդատար (Յակ–40, –42), սպորտ., ուսումնամարզ. (Յակ–18, –50) ևն:

ԽՍՀՄ Պետ. (1941, 1942, 1943, 1946, 1947, 1948, 1977), Լենինյան (1972) մրց–ներ:

ՅԱԿՈՎԼԵՎ, Իվան Յակովլևիչ (1848–1930), չուվաշ մանկավարժ–լուսավորիչ, գրող: Չուվաշ. այբուբենի և գր. լեզվի հիմնադիրը:

ՅԱԿՈՎԼԵՎ Յուրի Վասիլևիչ (1928–2013), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1976): 1952–ից՝ Մոսկվայի Ե. Վախթանգովի անվ. թատրոնի դերասան (Մայոր՝ Ա. Ֆրեդրոյի «Տիկնայք և հուսարներ», Չեխով՝ Լ. Ա. Մալյուգինի «Ծիծաղելի իմ երջանկություն», Դուդուկին՝ Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», ևն): Նկարահանվել է կինոյում [«Ապուշը», «Հուսարական բալլադ», «Իվան Վասիլևիչը փոխում է մասնագիտությունը», «Ճակատագրի հեգնանք կամ Բաղնիքդ անուշ» (հեռուստաֆիլմ) ևն]: Կերպարներին բնորոշ են հատուկ թեթևությունը, նրբագեղ շարժումները, զգացմունքների հագեցվածությունը:

ՌԽՖՍՀ (1970), ԽՍՀՄ (1979), ՌԴ (1994) Պետ. մրց-ներ:

ՅԱԿՈՎԼԵՎ Նիկոլայ Դմիտրիևիչ (1898–1972), խորհրդ. հրետանու մարշալ (1944): ՀՄՊ-ի ժամանակ եղել է Կարմիր բանակի Հրետան. գլխ. վարչության պետ:

ՅԱԿՈՎԼԵՎ Նիկոլայ Նիկոլաևիչ (1870–1966), ռուս երկրաբան, հնէաբան: ՌԳԱ (1921), ԽՍՀՄ ԳԱ (1925) թղթ. անդամ: Ռուսաստանում առաջինն է կատարել անողնաշարների հնէաէկոլոգ. ուսումնասիրություններ: Հնէաբանների ընկ-յան առաջին նախագահը (1916–ից, պատվ.՝ 1940–ից):

ՅԱԿՈՎԼԵՎ Նիկոլայ Ֆեոֆանովիչ (1892–1974), ռուս. լեզվաբան: Մոսկվայի հնչյունաբան. դպրոցի հիմնադիրներից: Հեղինակ է ընդհ. հնչյունաբանությանն ու հնչակարգությանը, կովկաս. լեզուներին, ուղղագրության տեսությանը վերաբերող աշխ-ների: Մշակել է այբուբենի ստեղծման մաթ. բանաձև՝ ըստ լեզվի հնչյունաբան. համակարգի: ԽՍՀՄ մի շարք ժողղ-ների համար ստեղծել է գիր:

ՅԱԿՈՎԼԵՎ Սերգեյ Վասիլևիչ (1914–2005), ռուս քիմիկոս: ՌԳԱ ակադ. (1987): Աշխ-ները վերաբերում են բնական ջրերի և կեղտաջրերի մաքրման ֆիզքիմ. և կենսաքիմ. եղանակներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1981, 1989):

ՅԱԿՈՎԼԵՎ Վալերի Նիկոլաևիչ (ծ. 1939), ռուս ռեժ.: Չուվաշ. ԻԽՍՀ (1970), ՌԽՖՍՀ (1975) արվ. վաստ. գործիչ: ԽՍՀՄ ժող. արտիստ (1991): 1967–ից՝ Չուվաշ. դրամատիկ. թատրոնի ռեժ., 1979–ից՝ գլխ. ռեժ., 1990–ից՝ գեղ. ղեկ.:

Չուվաշ. Հանրապետության (1977, 1999), ՌԴ (2003) Պետ. մրց-ներ:

ՅԱԿՈՎԼԵՎ Վասիլի Նիկոլաևիչ (1893–1953), ռուս գեղանկարիչ: ՌԽՖՍՀ ժող. նկարիչ (1943): ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի անդամ (1947): Հեղինակ է թեմատիկ պատկերների, դիմանկարների, («Պարտիզան», 1941–42), նատյուրմորտների («Ձկներ», 1933), պլաստիկ ավարտվածությամբ գծանկարների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943, 1949):

ՅԱԿՈՎԼԵՎԱ Ելենա Ալեքսեևնա (ծ. 1961), ռուս դերասանուհի: ՌԴ ժող. արտիստ (2002): 1984–ից (ընդհատումներով)՝ Մոսկվայի «Սովրեմեննիկ» թատրոնի դերասանուհի: Նկարահանվել է «Ինտերաղջիկը», «Անկո՛ր, կրկին անկո՛ր», «Չեռնով/Chernov», «Ինչ հիասքանչ խաղ է», «Պետերբուրգյան գաղտնիքներ», «Կամենսկայա» (վերջին երկուսը՝ հեռուստասերիալ) և այլ ֆիլմերում: ՌԴ Պետ. մրց. (2000):

ՅԱԿՈՎԼԵՎԱ Օլգա Միխայլովնա (ծ. 1941), ռուս. դերասանուհի: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1985): 1962–2004–ին՝ Մոսկվայի Լենինյան կոմերիտմիության անվ., Մալայա Բրոննայայի, Տագանկայի, Վ. Վ. Մայակովսկու անվ. թատրոնների, 2004–ից՝ Ա. Պ. Չեխովի անվ. ՄԳԱԹ-ի դերասանուհի: Գլխ. դերերով հանդես է եկել Ա. Վ. Էֆրոսի բեմադրություններում, նաև Թ. Ուիլյամսի «Տոկիոյի հյուրանոցի բարում», Ն. Կոուարդի «Գարնանային տենդ» (Ջուդիթ Բլիսս) և այլ ներկայացումներում:

ՌԴ Պետ. մրց. (1995):

ՅԱԿՈՒԲԻ (ծ. թ. անհտ–897), արաբ պատմիչ և աշխարհագետ: «Պատմություն» աշխ-յան մեջ շարադրել է հին ժողղ-ների (ասորիների, հայերի, եգիպտացիների, հույների) և Արաբ. խալիֆության պատմությունը մինչև 872-ը: Գրել է նաև «Երկրների մատյան» աշխարհագր. երկը:

ՅԱԿՈՒԲՈՎՍԿԻ Իվան Իգնատևիչ (1912–1976), ԽՍՀՄ մարշալ (1967): ԽՄ կրկնակի (1944), ՉԽՍՀ (1970) հերոս: ՀՄՊ-ի ժամանակ եղել է տանկ. գնդի, տանկ. բրիգադի հրամ., գվարդ. տանկ. կորպուսի հրամ-ի տեղակալ: 1957–65-ին՝ Գերմանիայում տեղակայված խորհրդ. զորքերի գլխ. հրամ-ի 1-ին տեղակալ և գլխ. հրամ.: 1967–ից՝ ԽՍՀՄ պաշտպ-յան նախարարի 1-ին տեղակալ, ***Վարշավայի պայմանագրի*** անդամ երկրների միացյալ ԶՈՒ գլխ. հրամ.:

ՅԱԿՈՒԼՈՎ Գեորգի (Յակուլյան Գևորգ) Բոգդանի, ***Ժորժ Վելիկոլեպնի*** (1884–1928), նկարիչ, արվ-ի տեսաբան: Հեղինակ է գեղանկարչ. («Ձիարշավ», 1905, «Աքաղաղներ», 1907, «Կաֆե-շանտան», 1902, ևն) և գրաֆիկ. գործերի, որտեղ համադրել է Արևելքի ու Արևմուտքի մշակութ. ավանդույթները: Յ. մշակել է նոր սկզբունքներ, ընդգծել ճարտ. դեկորների և գեղանկարչության համադրման անհրաժեշտությունը բեմանկարչության մեջ (կոնստրուկտիվոճ): Ձևավորել է ներկայացումներ Մոսկվայում, Երևանում, Փարիզում (Շ. Լևկոքի «Ժիրոֆլե-Ժիրոֆլյա», 1922, Գ. Սունդուկյանի «Պեպո», 1925, Վ. Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը», 1926, ևն):

ՅԱԿՈՒՇԵՎ Ալեքսանդր Սերգեևիչ (ծ. 1947), ռուս մարզիկ (տափօղակով հոկեյ): ԽՍՀՄ ս. վ. վ. (1970): Ձմեռ. օլիմպ. խաղերի (1972, 1976), աշխարհի, Եվրոպայի, ԽՍՀՄ բազմակի (1967–79) չեմպիոն: Մոսկվայի «Սպարտակ» թիմի հարձակվող:

ՅԱԿՈՒՇԻՆ Միխայիլ Իոսիֆովիչ (1910–1997), ռուս մարզիկ, մարզիչ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1940), վ. մ. (1957), 1935–47-ին՝ ԽՍՀՄ բազմակի չեմպիոն (ֆուտբոլ, գնդակով և տափօղակով հոկեյ)՝ Մոսկվայի «Դինամո» թիմի կազմում: Բազմիցս գլխավորել է ԽՍՀՄ հավաքականը (1952–68):

ՅԱԿՈՒՊՈՎ Հարիս Աբդուռահմանովիչ (1919–2010), թաթար նկարիչ: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1980): Ռուսաստանի գեղարվ-ի ակադ-ի անդամ (1997): Պատմ. և ժանր. պատկերները, բնանկարները («Հովիտ», 1970), դիմանկարները («Չելնինցի գեղեցկուհիներ», 1975) աչքի են ընկնում վառ երանգավորումով, գեղանկարչ. ազատ ձևերով: ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ՅԱԿՈՒԹ Իբն Աբդալլահ (1178/79–1229), արաբ աշխարհագետ, պատմիչ և բանասեր (ծագումով՝ հույն): Հեղինակ է աշխարհագր. այբբեն. բառարանի և գրականագետների բառարանի՝ արաբ մատենագիրների մասին: Արժեքավոր տեղեկություններ է հաղորդել նաև Հայաստանի վերաբերյալ, ընդհանրացրել արաբ մատենագիրների տվյալները Հայկ. լ-աշխարհի մասին:

ՅԱԿՈՒՏ Վսեվոլոդ Սեմյոնովիչ (1912–1991), ռուս. դերասան: ՌԽՖՍՀ (1959), ԽՍՀՄ (1980) ժող. արտիստ: 1931–34-ին և 1939-ից՝ Մոսկվայի Մ. Ն. Երմոլովայի անվ. թատրոնի դերասան (Շուրա Զայցև՝ Լ. Ա. Մալյուգինի «Հին ընկերներ», Պուշկին՝ Ա. Պ. Գլոբայի «Պուշկին», սըր Ջոն՝ Ռ. Հարվուդի «Հանդերձարար», Պաղտասար՝ Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար», ևն: Նկարահանվել է կինոյում: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946):

ՅԱԿՈՒՏԵՐԵՆ, *յակուտների*, դոլգերի, նաև էվենների, էվենկների լեզուն: ***Յակուտիայի*** պետ. լեզուներից (ռուս-ի հետ): Պատկանում է թյուրք. լեզվաընտանիքի ույղուր. խմբին: Գրի հիմքում՝ լատ. (1929–39), ապա ռուս. (1939–ից) այբուբենն է:

ՅԱԿՈՒՏԻԱ, **Սախայի Հանրապետություն**, ՌԴ Հեռավորարլ. դաշն. օկրուգի կազմում: Տարածքը՝ 3,08 մլն *կմ*^{2}, բն.՝ 949,8 հզ. (2009): Ունի 34 շրջան, 13 քաղաք և 42 քտա: Վարչ. կենտրոնը՝ ***Յակուտսկ***: Կազմավորվել է 1922-ին՝ որպես Յակուտիայի ԻԽՍՀ: 1991-ից՝ ներկայի անվանումը: Տարածքի զգալի մասն անտառապատ է: Գլխ. գետերը (Լենա, Յանա, Վիլյույ, Ալդան ևն) նավարկելի են:

ՅԱԿՈՒՏՆԵՐ (ինքնանվանումը՝ սախա), ժողղ ՌԴ-ում, Յակուտիայի հիմն. բնակչությունը (432,3 հզ.): Ընդհ. թիվը ՌԴ-ում՝ 443,9 հզ. (2002): Լեզուն՝ յակուտ.: Հավատացյալներն ուղղափառ քրիստոնյա են:

ՅԱԿՈՒՏՍԿ, ՌԴ Սախայի Հանրապետության (*Յակուտիա*) մայրաքաղաքը, նվիկզստ՝ Լենայի ափին: Ավտոճանապարհների և ավիագծերի հանգույց է: Բն.՝ 299,1 հզ. (2015): Կան նավանորոգարան, ՊՇԷԿ, ջրէկ ևն: Ունի համալսարան, ՌԳԱ ՍԲ մասնաճյուղ, սառցայթագիտ-յան ինստ., 3 թատրոն և թանգարաններ: Հիմնադրվել է 1632-ին: Ճարտ. հուշարձաններից են փայտաշեն, վեղարածածկ աշտարակը (1683), տղամարդկանց Սպասսկի մենաստանը (1664, այժմ՝ գործող): Յ-ում տեղի են ունեցել «Ասիայի երեխաներ» միջազգ. սպորտ. խաղերը (1996, 2000, 2004, 2008 և 2012), իսկ 2014-ին՝ մասռեստլինգի (յակուտ. – ձեռնափայտը մի կողմ քաշել) աշխարհի առաջնությունը:

ՅԱՀՄՈՍ I, Եգիպտոսի փարավոն՝ մ. թ. ա. 1559–34-ին: Եգիպտոսն ազատագրել է հիքսոսների տիրապետությունից:

ՅԱՀՅԱ իբն Մուհամմեդ (1867/69–1948), Եմենի թագավոր՝ 1918–48-ին: 1904-ին ընդունել է շիա զեյիդների համայնքի իմամի տիտղոսը: Սպանվել է:

ՅԱՀՅԱ ԱՆՏԻՈՔԱՑԻ (մոտ 980–1066), քրիստոնյա արաբ պատմիչ և բժիշկ: Նրա «Տիեզերական պատմություն»-ը կարևոր սկզբնաղբյուր է Ֆաթիմյանների ժամանակաշրջանի պատմության համար, որտեղ արժեքավոր տեղեկություններ կան նաև Հայաստանի X–XI դդ-ի պատմության մասին:

ՅԱՂՃՅԱՆ Էդմոնտ (1904–1997), նկարիչ: 1907-ին ընտանիքի հետ Խարբերդից տեղափոխվել է ԱՄՆ: 1945-ին՝ Հվ. Կարոլինայի համալսարանի գեղ. բաժնի տնօրեն: Հեղինակ է հիմնականում քաղաք. բնանկարների (Նյու Յորքի ցերեկ., գիշեր. ու ձմռան պահերը ևն), ընդգծել է մեծ քաղաքի աշխույժ դիմագիծը («Քարշող շոգենավերը» ևն):

ՅԱՂՃՅԱՆ (Յաղջյան) Հայկ (1924–1965), դիրիժոր: Ֆրեզնոյի ֆիլհարմոնիկ նվագախմբի հիմնադիր-դիրիժոր (1954–ից): 1959–ից՝ Յինցինատիի (ԱՄՆ, Օհայո նահց), 1963–ից՝ Պիտսբուրգի սիմֆ. նվագախմբերի դիրիժոր: 1964–ին ելույթներ է ունեցել Երևանում: Յ–ին է նվիրված Ալան Հովհաննեսի «Սգո օդան»: Երիտասարդ դիրիժորների մրցույթի 1–ին մրց. (1958, Լիվերպուլ):

ՅԱՂԶԻԵՎ (Յաղջյան) Լուկա Լազարի (1910–1993), հրթիռաշինության բնագավառի գիտնական: Սոց. աշխ. հերոս (1961): Յ–ի մասնակցությամբ մշակված տեխնոլոգիաները և բացառիկ սարքավորումները հնարավորություն են տվել ստեղծելու «Յիկլոն», «Դնեպր», «Զենիթ» տիեզ. կրող հրթիռները, Ռ–1, –2, –5Մ, –12, –12ՈՒ, –14, –14ՈՒ բալիստիկ հրթիռները, Ռ–16, –16ՈՒ, –36, ՄՌ–ՈՒՌ–100, – 36 Մ միջմայրցամաք. հրթիռները ևն:

Լենինյան (1963), ԽՍՀՄ Պետ. (1977) մրց–ներ, Լենինի (1959, 1961, 1969), Աշխ. կարմիր դրոշի (1956) շքանշաններ:

ՅԱՂՋՅԱՆ Գրիգոր Վարդանի (1916–1983), դրամատուրգ, դերասան: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1954): 1966–82–ին՝ Երևանի դրամատիկ. թատրոնի գր. բաժնի վարիչ: Հեղինակ է «Զոյա» (1942), «Վաճառված տուն» (1949), «Կյանքի շունչը» (1954), «Գարնան շունչը» (1956), «Մի կաթիլ արև» (1968) և այլ պիեսների:

ՅԱՂՈՒԲՅԱՆ Եսայի Սարգսի (1878–1957), ազգ–ազատագր. շարժման գործիչ, Մուսա լ–ան հերոսամարտի ղեկ–ներից: Հերոսամարտի ժամանակ եղել է 1–ին գծում, խրախուսել կովողներին: Ֆրանս. բանակում գործող Հայկ. լեգեոնի կազմում մասնակցել է թուրքերի դեմ մղված ***Արարայի ճակատամարտին*** (1918–ի սեպտ. 19): 1947–ին հայրենադարձել է:

ՅԱՂՈՒԲՅԱՆ Կարապետ (1857–1911), բառարանագիր: Հրատարակել է «Հայերէն–ռուսերէն բառարան» (1891):

ՅԱՂՈՒԲՈՎ Ադիլ (1926–2009), ուզբեկ գրող: Ուզբեկ. ԽՍՀ ժող. գրող (1985): Հեղինակ է «Հեշտ չէ դառնալ տղամարդ» (1966) երիտասարդության մասին, «Ուլուգբեկի հարստությունը» (1974) պատմ., «Խիղճ» (1978), «Կարապների վերջին երգը» (1986) վեպերի, նաև վիպակների, պատմվածքների, պիեսների:

ՅԱՄԱ, մահվան աստվածը վեդայական կրոնում, բրահմայականության մեջ, հինդուիզմում և բուդդիզմում, հանգուցյալների թագավորության կառավարիչը: Պատկերվել է պարանը ձեռքին ծերունու տեսքով:

ՅԱՄԱԳԱՏԱ Արիտոմո (1838–1922), Ճապոնիայի վարչապետ՝ 1889–91 և 1898–1900–ին, մարշալ (1898): 1904–05–ի ռուս–ճապոն. պատերազմի ժամանակ՝ ԳՇ պետ: 1909–ից՝ Գաղտնի խորհրդի նախագահ:

ՅԱՄԱԴԱ Իսուձու (1917–2012), ճապոնացի կինոդերասանուհի: Նկարահանվել է «Նանիվի էլեգիան» (1936), «Քույրերը Գիոնից» (1936), «Սարդոստայնի ամրոցը» (ըստ Վ. Շեքսպիրի «Մակբեթ» պիեսի), «Գահին արյան մեջ», «Կասկած» և այլ ֆիլմերում:

ՅԱՄԱԴԱ Կոսակու (1886–1965), ճապոնացի կոմպոզիտոր, դիրիժոր: Ճապոնիայի արվ–ների ակադ–ի անդամ (1942): Ճապոն. արդի երաժշտության հիմնադիրներից, Տոկիոյի ֆիլհարմոնիկ նվագախմբի (1914) և ճապոն. ֆիլհարմոնիկ ընկ–յան (1925) հիմնադիրը: Հեղինակ է «Սև նավեր» (1939) օպերայի, նաև կանտատների, սիմֆոնիաների, սիմֆ. պոեմների, խմբերգերի, երգերի, երաժշտատես. աշխ–ների, ճապոն. ժող. երգերի մշակումների:

ՅԱՄԱԼ (նենեցերեն՝ յա – երկիր, մալ – ծայր), թ–կղզի Արմ. Սիբիրի հս–արմ–ում՝ Բայդարատարայի և Օբի խորշերի միջև՝ Յամալո–Նենեց. ԻՄ–ում: Տարածքը՝ 122 հզ. *կմ*², երկ.՝ 700 *կմ*, բարձր.՝ մինչև 84 *մ*: Ծածկված է տունդր. և անտառատունդր. բուսականությամբ: Տարածված է հավերժ. սառածությունը: Կան բազմաթիվ լճեր, գազի և նավթի հանքավայրեր: Զբաղվում են եղջերվաբուծությամբ, ձկնորսությամբ:

ՅԱՄԱԼՈ–ՆԵՆԵՑԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ՕԿՐՈՒԳ, ՌԴ սուբյեկտ Տյումենի մարզում (Ուրալի դաշն. օկրուգ): Կազմավորվել է 1930–ին: Տարածքը՝ 769,2 *կմ*²: Բն.՝ 540 հզ. (2015). ռուսներ, նենեցներ, խանտեր, կոմիներ և ուր.: Ունի 6 քաղաք և 9 քստա: Կենտրոնը՝ ***Սալեխարդ***: Գտնվում է Արևմտասիբիր. հարթավայրի ծայր հս–ում, ընդգրկում է Սպիտակ, Եղջերվի և Շոկալսկու կղզիները, Յամալ և Գիդանի թ–կղզիները: Ողողվում է Կարայի ծովի ջրերով: Տնտ–յան առաջատար ճյուղերն են գազի և նավթի (35,9 մլն *տ*, 2011) արդյունահանումը: Զարգացած են ձկնաբուծությունը (սիգ ձկնատեսակի համաշխ. պաշարների 70 %–ը, 2011), անտառանյութի արդ–յունը, եղջերվաբուծությունը (600 հզ. հս. եղջերու, 2014), մորթատու գազանաբուծությունը: Կարևոր նշանակություն ունի նավարկությունը Հս. ծով. ուղիով և Օբ, Նադիմ, Տազ, Պուր գետերով: Զարգացած է խողովակաշար. տրանսպորտը (գազամուղը դեպի Եվրոպա):

«ՅԱՄԱՀԱ» (Yamaha), ճապոն. ֆիրմայի անվանում (1897–ից՝ Nippon Gakki Manufacturing Co., Ltd, 1987–ից՝ Yamaha Corp): Հիմնադրել է ստեղնավոր երաժշտ. գործիքների վարպետ Տորակասու Յամահան (1887): Թողարկում է համերգ. ռոյալներ (1950–ից), փող. (1967–ից), էլ. երաժշտ. (1958–ից) և այլ գործիքներ: Դուստր ձեռն–ներն արտադրում են նաև մոտոցիկլետներ, ձյունագնաց մեքենաներ:

ՅԱՄԱՀԱՏԱ, ք. Ճապոնիայի Հոնսյու կղզում: Համանուն պրեֆեկտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 253,4 հզ. (2014): Մետաքսագործության կենտրոն է: Յ–ում է Հատիման տաճարը:

ՅԱՄԱԶԱԿԻ Նաոկատա (1870–1929), ճապոնացի երկրաբան և աշխարհագետ: Աշխ–ները վերաբերում են հրաբխագիտյան և երկրաշարժի հարցերին: Հեղինակ է «Ճապոնիայի աշխարհագրություն» (հ. 1–10) բազմահատորյակի: Ճապոնիայի աշխարհագր. ընկ–յան հիմնադիրը (1925):

ՅԱՄԱՄՈՏՈ Իսորոկու (1884–1943), ճապոնացի ծովակալ (1936): ԵՀՊ–ի ժամանակ՝ ճապոն. ՌԾՆ գլխ. հրամ.: Զոհվել է ամերիկ. կործանիչներով խփված ինքնաթիռում:

ՅԱՄԱՄՈՏՈ Սացուո (1910–1983), ճապոնացի կինոռեժ.: Նկարահանել է «Պատերազմ և խաղաղություն» (1947, Ֆ. Կամեիի հետ), «Սպիտակ մեծ աշտարակ» (1966, Միջազգ. կփ Մեծ մրց., 1967, Մոսկվա), «Պատերազմ և մարդիկ» (1970–73), «Օգոստոսն առանց կայսրի» (1978) և այլ ֆիլմեր:

ՅԱՄԱՍԱԿԻ (Yamasaki) Մինորու (1912–1986), ամերիկացի ճարտ. (ծագումով՝ ճապոնացի): 1950–60–ական թթ–ին ստեղծել է երկաթբետոնե ձևերով և մետաղ. հարդարմամբ աչքի ընկնող շենքերի մոդեռնիստ. տարբերակ: Է. Ռոտի և ուր. հետ Նյու Յորքում կառուցել էր միջազգ. առևտրի կենտրոնի 110–հարկանի 2 աշտարակները (2001–ին պայթեցվել են):

ՅԱՄԱՏՈ, ցեղ. միություն Ճապոնիայում՝ II–IV դդ–ում: Ճապոն. պետության հիմնադիր տարրը: «Յամատոյի ոգի» արտահայտությունը դարձել է «ճապոնական ոգու» հոմանիշը:

ՅԱՄԲԼԻՔՈՍ (Iamblichos, մոտ 250–մոտ 330), նորպլատոնականության հիմնադիրը Սիրիայում, որտեղ աշակերտել է ***Պորփյուրին***, զարգացրել և խորացրել է Պլոտինի նորպլատոնականության միստիկ. և մոգական գիծը: Յ–ի «Պյութագորասի ուսմունքների ժողովածու»–ից պահպանվել է 5 գործ: Հեղինակ է նաև «Քաղդեական կատարյալ աստվածաբանությունը» երկի: Տես. փիլ–յան բնագավառում շարունակել է Պլատոնի փիլ–յան հիմն. կատեգորիաների՝ Միակի, Մտքի և Ոգու քննարկումը, գործն. փիլ–յան մեջ ձգտել է հեթանոս. կրոնի վերածնմանը:

ՅԱՄՊԻԼՈՎ Բաուդործա Բազարովիչ (1916–1989), բուրյաթ կոմպոզիտոր: Բուրյաթ–Մոնղ. ԻԽՍՀ (1956), ՌԽՖՍՀ (1959) արվ. վաստ. գործիչ: ՌԽՖՍՀ (1975), ԽՍՀՄ (1983) ժող. արտիստ: Սոց. աշխ. հերոս (1986): Հեղինակ է օպերաների («Յիրեմպիլ Ռանժուրով», 1974, «Մահից ուժեղ», 1983, ևն), բալետների («Չինգիս խան», 1989, «Գեղեցկուհի Անգարա», համահեղ.՝ Լ. Կ. Կնիպպեր, 1959, ևն), նաև օրատորիայի, կանտատների, նվագախմբային և այլ երկերի:

Բուրյաթ. ԻԽՍՀ (1970), ՌԽՖՍՀ (1972) Պետ. մրց–ներ:

ՅԱՄՈՒՍՈՒԿՐՈ (Yamoussoukro), ***Կոտ դ'Իվուարի*** (նախկին՝ Փղոսկրե Ափ) մայրաքաղաքը (1983–ից): Բն.՝ 243 հզ. (2010): Տրանսպորտ. հանգույց է: Ունի միջազգ. օդանավակայան:

ՅԱՅԼԻ, **Յալի, Զոփի**, տղամարդկանց հայկ. ժող. խմբապար: Երաժշտ. չափը՝ 2/4: Ունի 2 տարբերակ. 1–ին՝ ձեռքերը բռնած, աջ շարժումով, արագ, 2–րդը՝ պարագլուխ («մայր»). պարողները հետևում են պարագլխին ու շարժվում, ուշացողին և սխալվողին «ծեծում» են ճիպոտներով:

ՅԱՆ (Յանչևեցկի) Վասիլի Գրիգորևիչ (1874/75–1954), ռուս գրող: Հեղինակ է «Մոնղոլների արշավանքը» («Չինգիզ–Խան», 1939, հայ.՝ 1943, «Բատի», 1942, հայ.՝ «Բաթու խան», 1984, «Դեպի «Վերջին ծովը»», հրտ.՝ 1955, հայ.՝ 1989) պատմ. եռերգության: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942):

ՅԱՆ ՄԱՅԵՆ (Jan Mayen), կղզի Ատլանտ. օվկ–ի հս–ում՝ Նորվեգիայի կազմում: Տարածքը՝ 380 *կմ*², բարձր.՝ մինչև 2277 *մ*: Կան գործող հրաբուխ (Բերենբերգ) և սառցադաշտեր (117 *կմ*²): Կղզում կուտակվում են մեծ քանակությամբ թռչուններ:

ՅԱՆ ՇԱՆԿՈՒՆ (1907–1998), ՉԺՀ նախագահ (1988–93), ՉԿԿ ԿԿ Ռազմ. խորհրդի (1989–ից), Համաչին. ժող. ներկայացուցիչների ժողովի Մշտական կոմիտեի (1982–ից) նախագահի տեղակալ: 1981–89–ին՝ ՉԺՀ գլխ. քարտուղար, 1989–ից՝ Կենտր. ռազմ. խորհրդի նախագահի տեղակալ:

ՅԱՆ ՖՈՒ (1853–1921), չին փիլ., հրապարակախոս, թարգմանիչ: Ռեֆորմացիայի շարժման գաղափարախոս: Թարգմանել է Թ. Հաքսլիի, Հ. Սպենսերի, Ջ. Միլի, Շ. Մոնտեսքյոյի և ուր. ստեղծագործություններից:

ՅԱՆԱ, գետ Յակուտիայում: Կազմավորվում է Պուլգալախ և Սարտանգ գետերի միախառնումից: Թափվում է Լապտևների ծովի համանուն ծոցը: Երկ.՝ 872 *կմ*, ավազանը՝ 238 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1000 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է Վերխոյանսկ քաղաքի մոտից: Կա ձկնորսություն:

ՅԱՆԱՆ, **Ֆուշի**, քաղաք Չինաստանի Շենսի պրովինցիայում: Բն.՝ 2,1 մլն (2015):

ՅԱՆԱՉԵԿ (Janáček) Լեոշ (1854–1928), չեխ կոմպոզիտոր, բանահավաք, դիրիժոր: Հեղինակ է «Նրա խորթ աղջիկը» (1903), «Կատյա Կաբանովա» (ըստ Ա. Ն. Օստրովսկու «Ամպրոպ» պիեսի, 1921), «Խորամանկ աղվեսի արկածները» (1923) օպերաների, նաև վոկալ-սիմֆ. երկերի, ժող. երգերի մշակումների:

ՅԱՆԳ, **Յան Չժենին** (Yang Chen Ning, ծ. 1922), ամերիկացի չին ֆիզիկոս: ՌԳԱ արտ. թղթ. անդամ (1994): 1945-ից՝ ԱՄՆ-ում: Մտեղծել է (1954) տրամաչափիչ դաշտերի ժամանակակից տեսության հիմքերը (Յ–Միլսի տեսություն): 1956-ին Լի Յզունդաոյի հետ առաջադրել է ***թույլ փոխազդեցություններում*** զույգության պահպանման, իսկ 1957-ին՝ համակցված զույգության չպահպանման վարկածները (ուրիշներից անկախ):

Նոբելյան մրց. (1957, Լի Յզունդաոյի հետ):

ՅԱՆԳ (Young) Ջոն (ծ. 1930), ամերիկացի աստղագնաց, առաջին կարգի կապիտան: Թռել է «Ջեմինի-3» (1965-ի մարտ), «Ջեմինի-10» (1966-ի հուլիս), «Ապոլոն-10» (Լուսնի շուրջը, 1969-ի մայիս), «Ապոլոն-16» (վայրէջք Լուսնի վրա, 1971-ի ապրիլ), բազմակի օգտագործման փոխադր. «Սփեյս-Շաթլ» (1980-ի ապրիլ, 1983-ի նոյեմբեր–դեկտ.) տիեզերանավերով:

ՅԱՆԳ Փրեզ (Լեստեր, 1909–1959), աֆրոամերիկացի սաքսոֆոնահար, կոմպոզիտոր: 1936-ից նվագել է Ք. *Բեյսիի* նվագախմբում: 1950-ական թթ-ին հանդես է եկել որպես մենակատար, ղեկավարել անսամբլներ: Հեղինակ է ջազ. կոմպոզիցիաների:

ՅԱՆԳԵԼ Միխայիլ Կուզմիչ (1911–1971), հրթիռատիեզ. տեխնիկայի բնագավառի ռուս կոնստրուկտոր: ԽՍՀՄ (1966), Ուկրաինայի (1961) ԳԱ-ների ակադ.: Սոց. աշխ. հերոս (1959, 1961): Հրթիռ. տեխնիկայում նոր՝ վառելիքի բարձր եռման բաղադրիչների և կառավարման ինքնաշխատ համակարգի օգտագործմամբ, ուղղության հիմնադիր: Յ-ի ղեկավարությամբ մշակվել են հրթիռ. համալիրներ, կրող հրթիռներ, տիեզ. ապարատներ:

Լենինյան (1960), ԽՍՀՄ Պետ. (1967) մրց-ներ:

ՅԱՆԳՈՆ (Yangon, մինչև 1989-ը՝ Ռանգուն), ***Մյանմա*** (մինչև 1989-ը՝ Բիրմա) պետության խոշորագույն քաղաքը և նախկին մայրաքաղաքը (2005-ի նոյեմբ. 6-ից կառ-յան նստավայրը տեղափոխվել է Նեյպիդո ք.): Երկրի տնտ., մշակութ. և կրթ. կարևորագույն կենտրոն է, խոշոր տրանսպորտ. հանգույց: Բն.՝ 6 մլն (2010): Ծով. և գետ. նվ՝նգստ՝ Իրվադի գետի դելտայում: Ունի միջազգ. օդանավակայան, համալսարան, թանգարան: 1852-ին Մեծ Բրիտանիան նվաճել է Յ.: 1862-ին՝ անգլ. տիրույթների կենտրոն: Յ-ում է Շուեդագոուն պաշտամունք. համալիրը (ստուպայի կենտրոնը հիմնադրվել է մ. թ. ա. V դ–ում, վերականգնվել է XIV–XVIII դդ–ում, շրջապատի շինությունները՝ XIX–XX դդ–ում):

ՅԱՆԳՍԹԱՈՒՆ (Youngstown), քաղ. ԱՄՆ-ի Օհայո նահ–ում: Բն.՝ 74 հզ. (արվարձաններով՝ շուրջ 600 հզ., 2007):

ՅԱՆԵՆԿՈ Նիկոլայ Նիկոլաևիչ (1921–1984), ռուս. մաթեմատիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1970): Սոց. աշխ. հերոս (1981): Աշխ-ները վերաբերում են բազմաչափ դիֆերենցիալ երկրչփ-յանը, մաթ. ֆիզիկայի ոչ գծային խնդիրներին և հոծ միջավայրի մեխանիկային ու նրանց լուծման թվային մեթոդներին:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1953, 1972, 1985՝ հետմահու):

ՅԱՆԵՎՎԿԻ Սլավկո (1920–2000), մակեդոնացի գրող: Հեղինակ է «Եվ ցավ, և զայրույթ» (1964) վեպի, «Հաց և քար» (1957) բանաստեղծությունների, «Մնդուկ» (1976) պատմվածքների ժող-ների, «Միրաքլներ» (1984–88) վեպ-եռերգության (գրված է «մոգական ռեալիզմի» ավանդույթներով):

ՅԱՆԹԱՅ (Չիֆու, Yāntái), քաղ. Չինաստանում, նվինգստ Դեղին ծովի ափին՝ Շանդուն նահ–ում: Բն.՝ 6,5 մլն (2008): Կան սննդհամի, մետաքսագործության, մեքենաշինության, քիմ. և այլ ձեռն-ներ, ձկնորսություն:

ՅԱՆԻԳՐՈ (Yanigro) Անտոնիո (1918–1989), իտալացի թավջութակահար, դիրիժոր: Աշակերտել է Տիբրան ***Ալեքսանյանին:*** «Ջագրերի մենակատարներ» կամեր. նվագախմբի (1954) հիմնադիր-դիրիժորը: Ղեկավարել է Միլանի ռադիոյի սիմֆ., Բելգրադի կամեր. (1972-ից) նվագախմբերը:

ՅԱՆԻԿՅԱՆ, **Յանիգյան**, Գուրգեն Մկրտչի (1895–1984), գյուտարար, ազգ-քաղ. գործիչ: ԱՀՊ-ի սկզբին հայկ. կամավոր. 2-րդ գնդի կազմում մասնակցել է մարտերին: ԵՀՊ-ից հետո՝ ԱՄՆ-ում: 1973-ի հունվ. 27-ին Կալիֆոռնիայի Սանտա Բարբարա ք-ում սպանել է թուրք. հյուպատոսին ու նրա օգնականին և դատապարտվել ցմահ բանտարկության: 1984-ի հունվ-ին ազատ է արձակվել: Յ-ի ահաբեկչ. արարքով սկզբնավորվել է Հայ դատի զինված պայքարի նոր փուլ, որն իրագործել են Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը (ASALA), «Հայկական ցեղասպանության արդարության մարտիկներ» և այլ կազմ-յուններ:

ՅԱՆԻՆԳՍ (Jannings) Էմիլ (1884–1950), գերմանացի կինոդերասան: Աշխատել է Բեռլինի, Բրեմենի, Լայպցիգի և այլ թատրոններում, նկարահանվել «Ֆաուստ», «Տարտյուֆ», «Վերջին մարդը», «Երկնագույն հրեշտակ» և այլ ֆիլմերում: «Օսկար» (1929):

ՅԱՆԿԵԼԵՎԻՉ Յուրի Իսահիչ (1909–1973), հրեա ռուս. ջութակահար, մանկավարժ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1966): Աշակերտներից են Վ. Թ. ***Սպիվակովը,*** Վ. Վ. ***Տրետյակովը,*** S. S. Գրիդենկոն, Պ. Լ. ***Կոգանը*** և ուր.:

ՅԱՆԿԻ (անգլ.՝ yankee), XVIII դ–ից որպես մականուն տրվել է Նոր Անգլիա (ԱՄՆ) նահ–ում ծնված և այնտեղ բնակվող ամերիկացիներին: Արտերկրում այժմ «Յ.» են անվանում բոլոր ամերիկացիներին՝ ենթատեքստում նկատի ունենալով ԱՄՆ-ի բնակիչներին:

ՅԱՆԿՈՎՍԿԻ Ռոստիսլավ Իվանովիչ (1930–2016), բելառուս դերասան: ԲԽՍՀ (1967), ԽՍՀՄ (1978) ժող. արտիստ: Օ. Ի. ***Յանկովսկու*** եղբայրը: 1951-ից՝ Լենինաբադի, 1957-ից՝ Մինսկի Մ. Գորկու անվ. ազգ. դրամատիկ. ակադեմ. թատրոնների դերասան: Նկարահանվել է կինոյում:

Բելառուսի Հանրապետության Պետ. մրց. (1998):

ՅԱՆԿՈՎՍԿԻ Օլեգ Իվանովիչ (1944–2009), բելառուս դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1991): Ռ. Ի. ***Յանկովսկու*** եղբայրը: 1966-ին՝ Սարատովի դրամատիկ., 1973-ից՝ Մոսկվայի Լենինյան կոմերիտմիության անվ. թատրոնների դերասան. խաղացել է Կ. Մ. Սիմոնովի «Երիտասարդը մեր քաղաքից», Ն. Վ. Գոգոլի «Ամուսնություն», Վ. Շեքսպիրի «Համլետ», Ա. Պ. Չեխովի «Ճայ» և այլ ներկայացումներում: Նկարահանվել է կինոյում («Հայելի», «Թռիչքներ երազում և արթմնի», «Պահպանիր ինձ, իմ թալիսման», «Նույն ինքը՝ Մյունխհաուզենը», «Սովորական հրաշք», «Աննա Կարենինա», «Վահան և սուր», «Սիրահարված է իր ցանկությամբ» ևն):

ԽՍՀՄ (1987), ՌԽՖՍՀ (1989), ՌԴ (1996, 2002) Պետ. մրց-ներ:

ՅԱՆՇԻՆ Միխայիլ Միխայլովիչ (1902–1976), ռուս. դերասան, ռեժ.: ՌԽՖՍՀ (1947), ԽՍՀՄ (1955) ժող. արտիստ: 1924-ից՝ ՄԳԱԹ-ի դերասան (Լարիոսիկ՝ Մ. Ա. Բուլգակովի «Տուրբինների օրը», սըր Պիտեր՝ Ռ. Շերիդանի «Զարախոսության դպրոցը», ևն): Ղեկավարել է Մոսկվայի «Ռոմեն» (1937–41) և Կ. Ս. Ստանիսլավսկու անվ. դրամատիկ. (1950–63) թատրոնները: Նկարահանվել է կինոյում («Հարսանիք», 1944, «Շվեդական լուցկի», «Մեծ փոփոխություն», հեռուստաֆիլմ ևն):

ՌԽՖՍՀ Կ. Ս. Ստանիսլավսկու անվ. (1970), ԽՍՀՄ (1975) Պետ. մրց-ներ:

ՅԱՆՈՇԻ (Janossy) Լայոշ (1912–1978), հունգար ֆիզիկոս: Հունգարիայի ԳԱ ակադ. (1950): Աշխ-ները վերաբերում են տիեզ. ճառագայթներին, ատոմ. միջուկին և տարր. մասնիկներին, ֆիզիկայի մեթոդաբանությանը: Հայտնաբերել է թափանցող տարափները՝ տիեզ. ճառագայթներում (1940, Ջ. Ռոջեսթրի հետ):

ՅԱՆՈՎՍԿԱՅԱ Հենրիետա Նաումովնա (ծ. 1940), ռուս. ռեժ.: ՌԴ ժող. արտիստ (2004): Կ. Մ. ***Գինկասի*** կինը: Պիեսներ է բեմադրել ՌԽՖՍՀ թատրոններում, 1987-ից՝ Մոսկվայի ՊՀԹ-ի գլխ. ռեժ. («Շան սիրտը»՝ ըստ Մ. Ա. Բուլգակովի, 1987, ևն): Այլ բեմադրություններից են՝ «Սոխակը» (1988, ըստ Հ. Ք. Անդերսենի), «Իվանովը և ուրիշները» (1993, ըստ Ա. Պ. Չեխովի «Իվանով» պիեսի), Ա. Ն. Օստրովսկու «Ամպրոպ» (1997), Թ. Ուիլյամսի ««Յանկություն» տրամվայ» (2006) ևն:

ՅԱՆՈՎՍԿԻ Յուրի Իվանովիչ (1902–1954), ուկրաինացի գրող: Հեղինակ է «Նավի վարպետը» (1928), «Չորս սուր» (1930), «Չիավորներ» (1935, հայ.՝ 1936) և այլ վեպերի, «Կիևյան պատմվածքներ» (1948, հայ.՝ 1951) ժող-ի, «Դատախազի դուստրը» (1954) պիեսի և այլ գործերի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949):

ՅԱՆՉԵՆԿՈ Օլեգ Գրիգորևիչ (1939–2002), ռուս երգեհոնահար, դաշնակահար, դիրիժոր, կոմպոզիտոր: ՌԴ ժող. արտիստ (1997): Մինսկի կամեր. նվագախմբի (1968) հիմնադիր-գեղ. ղեկ.: 1971-ից՝ Մոսկվայի ֆիլհարմոնիայի մենակատար, 1984–93-ին՝ «Մադրիգալ» կամեր. անսամբլի գեղ. ղեկ.: Հեղինակ է օպերայի, բալետի, գործիք. կոնցերտների, կինոերաժշտության, սիմֆ. և այլ երկերի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1984):

ՅԱՆՉԺՈՒՒ (Yangzhou), ք. Չինաստանի Ցզյանսու նահանգ–ում՝ Մեծ ջրանցքի ափին: Բն.՝ 3,6 մլն (2008): Զարգացած են սննդի արդ–յան ճյուղերը, գղտ. սարքավորում–ների արտադր–յունը:

ՅԱՆՉՈ (Jancsó) Միկլոշ (1921–2014), հունգար կինոռեժ. և սցենարիստ: Նկարահանել է «Աստղեր և զինվորներ» (1967), «Էլեկտրա, իմ սեր» (1974), «Հունգարական ռապսոդիա» և «Allegro barbaro» (1979, երկերգություն), «Բռնապետի սիրտը կամ Բոկաչչոն Հունգարիայում» (1981), «Հիսուս Քրիստոսի հորոսկոպը» (1989), «Վե՛րջ արդարադատությանը» (2010) ֆիլմերը: Ստեղծել է կինեմատոգրաֆ. նոր հնարք՝ տևական դրվագներով, տեսախցիկի վիրտուոզ շարժումներով:

ՅԱՆՍԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, կաթոլիկության ոչ ուղղափառ հոսանք, ձևավորվել է XVII դ–ում՝ ***ճիզվիտների*** քննադատությունից հոլանդացի աստվածաբան Կ. Յանսենիոսի (1585–1638)՝ Օգոստինոսի մասին աստվածաբան. դրույթների պաշտպ–յան նպատակով: Առաջադրել է նախախնամության մասին ***կալվինականության*** ուսմունքին մոտ դրույթներ: Տարածվել է հիմնականում Ֆրանսիայում (վերացել է XVIII դ–ի կեսերին) և Նիդեռլանդներում: XIX դ–ում ձուլվել է ***հնակաթոլիկությանը***, հայտարարվել հերետիկոսություն՝ մի քանի պապական կոնդակներով:

ՅԱՆՍԶՈՆ (Յանց, Janszoon) Վիլհեմ, XVII դ–ի հոլանդացի ծովագնաց: 1606–ին հայտնագործել է Նոր Գվինեայի հվ. ափը, Ավստրալիան (Քեյփ Յորք թ–կղզու արմ. ափը):

ՅԱՆՍԿԻ (Iansky) Կառլ Գութե (1905–1950), ամերիկացի ֆիզիկոս–ռադիոճարտարագետ: Ռադիոաստղագիտ–յան հիմնադիրը: Նրա պատվին է կոչվել ճառագայթման հոսքի սպեկտր. խտության արտահամակարգ. միավորը, նշանակվում է Յան (*ɪ* y): 1 Յան = 10^{-26} *Վտ/(մ²·Հց)*:

ՅԱՆՍԿԻ Յան (1873–1921), չեխ բժիշկ: Հայտնաբերել է մարդու արյան 4–րդ խումբը և առաջարկել արյան խմբերի (1–4) դասակարգումը:

ՅԱՆՑԶԻ, **Յանցզիցզյան, Կապույտ գետ**, Չինաստանի և Եվրասիայի ամենաերկար գետը (5800 *կմ*), ավազանը՝ 1808,5 հզ. *կմ²*: Սկիզբ է առնում Տիբեթի բարձրավանդակի կենտր. մասի Տանգլա և Կունկուշիլի լ–շղթաների սառցադաշտերից: Անցնում է Սինա–Տիբեթ. լ–ները, հոսում Սիչուանի գոգավորությունով, ոռոգում Ցզանհան–յան և Չին. մեծ հարթավայրերը: Թափվում է Արևելաչին. ծով: Գլխ. վտակներն են Յալունցզյանը, Մինցզյանը, Ցզյալինցզյանը և Հանշույը: Յ–ի հովտում կան բազմաթիվ լճեր (Դունտինհու, Պոյանհու, Թայհու): Ձրի միջին ծախսը՝ 34 հզ. *մ³/վ*: Նավարկելի է գետաբերանից մինչև 2850 *կմ*: Զարգացած է ձկնորսությունը: Հարուստ է էներգետիկ. պաշարներով: Յ–ի ափերին են Իբին, Չունցին, Ուհան, Նանկին ք–ները, գետաբերանի մոտ՝ Շանհայ նավնգստ–ը:

ՅԱՆՑՅՈՒԱՆ (Yángquán), ք. Հս. Չինաստանի Շանսի նահնգ–ում: Բն.՝ 1,3 մլն (2005): Քարածխի ավազանի կենտրոն է:

ՅԱՆՈՒՇ ԲՈԳԴԱՆ (1889–1930), ուկրաինացի հնագետ, պատմաբան, ազգագրագետ, հայագետ: Շուրջ 200 գիտ. աշխ–ների մոտ 20–ը նվիրված են Ուկրաինայի և Լեհաստանի հայերի պատմությանը: Լվովում ստեղծել է հայագիտ. գր. հավաքածու, 1930–ին մշակել է Լվովում հայկ. ԳՀԻ ստեղծելու նախագիծ:

ՅԱՆՈՒՄ, դո՛ների, մուտքի–ելքի, հետագայում՝ ամեն ինչի սկզբի Աստվածը հռոմ. դից–յան մեջ: Պատկերվել է 2 դեմքով, որոնցից մեկն ուղղված է դեպի անցյալ, մյուսը՝ դեպի ապագա: Փխբ. իմաստով՝ «Երկերեսանի Յանուս» նշանակում է կեղծավոր մարդ:

ՅԱՆՈՒՍ, ***Սպրունի*** արքանյակ, հայտնաբերել է Ա. Դոլֆուսը (A. Dolfus, Ֆրանսիա, 1966): Հեռ. Սատուռնից՝ 151,5 հզ. *կմ*, տրամագիծը՝ մոտ 220 *կմ*: Պտտման սիդերիկային պարբերությունը՝ մոտ 16,7 *ժ*:

ՅԱՇԱՐ ՔԵՄԱԼ (Քեմալ Սադիկ Գյոկչելի, 1923–2015), քուրդ թուրքագիր գրող, լրագրող: Հեղինակ է «Ցախ Մեմեդ» (հ. 1–2, 1955, հայ.՝ 1975), «Եթե սպանես օձին» (1976), «Արյան կանչը» (1991), «Չակիրջայիցի էֆենը» (1972) վեպերի, «Ակչասազ կալվածքի տերերը» (1974–75) երկերգության, նաև վիպակների ու պատմվածքների ժող–ների: Թուրքիայի Հանրապետության նախագահի Մեծ, միջազգ. մրց–ներ, ՀՀ ՄՇ «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալ (2013):

ՅԱՇԵՆ (Նուհմանով) Քամիլ (1909–1997), ուզբեկ գրող: Ուզբ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1939), ժող. գրող (1969): Ուզբ. ԽՍՀ ԳԱ ակադ. (1969): Սոց. աշխ. հերոս (1974): Հեղինակ է բանաստեղծությունների, «Գուլսարա» (1934, Մ. Մուհամմեդովի հետ) երաժշտ., «Գեներալ Ռահիմովը» (1949), «Ուղեցույց աստղ» (1958), «Հեղափոխության արշալույսը» (1972) դրամաների, «Համզա» (գիրք 1–2, 1979–80) վեպի և այլ գործերի:

ԽՍՀՄ (1951), Ուզբ. ԽՍՀ Համզայի անվ. (1958) Պետ. մրց–ներ:

ՅԱՇԻՆ (Պոպով) Ալեքսանդր Յակովլևիչ (1913–1968), ռուս գրող: Հեղինակ է «Ալյոնա Ֆոմինա» (1949) և այլ պոեմների, «Խիղճ» (1961), «Արարչության օրը» (1968) բանաստեղծությունների ժող–ների, «Լծակներ» (1956), «Վոլոգոդյան հարսանիք» (1962), «Բաբա Յագա» (հրտ.՝ 1985), «Որդուն հյուրընկալվելիս» (հրտ.՝ 1987) պատմվածքների և վիպակների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

ՅԱՇԻՆ Ալեքսեյ Վալերևիչ (ծ. 1973), ռուս մարզիկ (տափօղակով հոկեյ): ՌԴ ս. վ. վ. (1993): Աշխարհի (1993, բրոնզե մեդալ՝ 2005), ԱՊՀ (1992), Ռուսաստանի (1992, 1993) չեմպիոն, օլիմպ. խաղերի արծաթե (1998), բրոնզե (2002) մեդալակիր:

ՅԱՇԻՆ Բորիս Վլադիմիրովիչ (ծ. 1932), ռուս. կինոռեժ.: Նկարահանել է «Աշնանային հարսանիքներ» (1968), «Տեղատարափ անձրև» (1975), «Մեր պարտքերը» (1977), «Ճեպընթացը» (1988), «Տունը Սուրբ Ծննդյան բուլվարում» (1992) և այլ ֆիլմեր:

ՅԱՇԻՆ Լև Իվանովիչ (1929–1990), ռուս ֆուտբոլիստ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1957): Սոց. աշխ. հերոս (1990): Համաշխ. ֆուտբոլի պատմության լավագույն դարպասապահներից: 1954–67–ին՝ ԽՍՀՄ հավաքականի դարպասապահ: Օլիմպ. խաղերի (1956), Եվրոպայի (1960), ԽՍՀՄ 5–ակի (1954–63) չեմպիոն:

ՅԱՇԻՆ Սերգեյ Իվանովիչ (ծ. 1947), ռուս. ռեժ.: ՌԴ արվ. վաստ. գործիչ (1993), ժող. արտիստ (1998): Մոսկվայի Ն. Վ. Գոգոլի անվ. դրամատիկ. թատրոնի գլխ. ռեժ. (1987–ից), գեղ. ղեկ. (1998–ից): Բեմադրել է Պ. Կոբուռնի «Ձին խաղը» (1981), Յ. Օ՚Նիլի «Երկար օրը ձգվում է մինչև գիշեր» (1988), Թ. Ուիլյամսի «Հագուստ ամառային հյուրանոցի համար» (1993), Ա. Ն. Օստրովսկու «Անօժիտը» (1996), Բ. Բրեխտի «Կուրաժ մայրիկն ու նրա երեխաները» (1997) և այլ գործեր:

ՅԱՇՊԱԼ (1903–1976), հնդիկ գրող: Գրել է հինդիով: Հեղինակ է «Ընկեր Դադան» (1941), «Կուսակցական ընկեր» (1946) վեպերի, «Դիվյա» (1945) պատմավեպի, հնդիկ ժողղ–ի ազգ–ազատագր. պայքարին նվիրված «Սուտ ճշմարտություն» (1958–60) երկերգության:

ՅԱՇՎԻԼԻ, **Իաշվիլի**, Պաոլո (Պավել) Ձիբրայելի (1895–1937), վրացի բանաստեղծ: 1915–ին հիմնադրել է վրաց սիմվոլիստների «Երկնագույն եղջյուրներ» գր. խմբակը, 1916–ին խմբագրել համանուն ամսագիրը: Աշակել է բանաստեղծ. նոր ձևեր: Հեղինակ է քաղաքաց. ոգով հագեցած բանաստեղծությունների, «Նոր Կոլխիդա» շարքի: «Հովհաննես Թումանյանին» (1923), «Ուկրաինուհու երգը» (1934) և այլ բանաստեղծություններում երգել է ժողղ–ների բարեկամությունը:

ՅԱՈ, 1. (վայաո) բանտու խմբի ժողղ Արմ. Մալավիայում (1,4 մլն), Հվ. Տանզանիայում (571 հզ.) և Հս. Մոզամբիկում (560 հզ., 1992): Հավատացյալները սուննի մահմեդական են, կան նաև քրիստոնյաներ: 2. (Ինքնանվանումը՝ մին, ման, զաո) ժողղ Հվ. Չինաստանում (2,6 մլն, 2009), Հս. Վիետնամում (751 հզ.) և Լաոսում (90 հզ.): Լեզուն մյաոյաո խմբի է: Հավատացյալներն ավանդ. հավատալիքների հետևորդ են:

ՅԱՉԵՎՍԿԻ Արթուր Արթուրովիչ (1863–1932), ռուս. բուսաբան: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1923): Աշխ–ները վերաբերում են բուսախտաբանությանը, մնկաբանությանը նև: ԽՍՀՄ–ում բույսերի պաշտպ–յան ծառայության կազմակերպիչ: Մնկերի առաջին որոշիչի հեղինակը (1897):

«ՅԱՌԱՋ», հաս., տնտ., քաղ., գր. եռօրյա թերթ (1909–14, Կարին, 1914–ին՝ «Երկիր», ապա՝ «Ալիք»): ՀՅԴ կուս–յան երիտասարդաց միության հրտ–յուն: Խմբ–ներ՝ Եղիշե Թոփչյան, Սիմոն Վրացյան, Շավարշ Միսաքյան:

«ՅԱՌԱՋ», հաս–քաղ., գր. պարբերաթերթ (1925–2009, Փարիզ, 1940–44–ին ընդհատվել է): ՀՅԴ բյուրոյի, ապա՝ ՀՅԴ Ֆրանսիայի կազմ–յան պաշտոնաթերթ, 1970–ական թթ–ի սկզբից՝ անկախ: Հիմնադիր–տնօրեն և խմբ.՝ Շավարշ ***Միսաքյան***, 1957–2009–ին տնօրեն–խմբ.՝ Արփիկ ***Միսաքյան***: Թերթի խմբագրությանը կից գործել է տպարան:

«ՅԱՌԱՋ» (**«Մեր նշանաբանն է յառաջ»**), քաղ. շաբաթաթերթ (1957–64, Բեյրութ): Արտոնատեր՝ Նեսիբ Նիմր, տնօրեններ՝ Արդալլա Հոշեյմի, Գասպար Տերտերյան, պատ. խմբ–ներ՝ Գառնիկ Ադդարյան, Հովհաննես Աղպաշյան, Հարություն Մադեյան: 1961–64–ին ունեցել է «Յառաջ–Գրական» շաբաթ. հավելված: 1965–70–ին հրատարակվել է գր–հաս. նույնանուն շաբաթաթերթը:

ՅԱՌԼԻԿ (թուրք.՝ յառլըկ – հրաման, կարգադրություն), ***Ոսկե Հորդայի*** խաների դիվանագիտ. փաստաթղթերը, արտոնագրերն աշխարհիկ և հոգևոր ավատատերերին՝ հողատարածքների և կալվածքների տիրելու, նաև հարկերից ազատելու համար: Յ. տրվել է նաև Աղրկովկասի տեղ. ֆեոդալներին՝ մնող. տիրապետության շրջանում:

ՅԱՌՆԵՖԵԼՏ (Järnefelt) Արմաս Էդվարդ (1869–1958), ֆինն կոմպոզիտոր, դիրի–

ժող: 1932–36-ին՝ Ֆինլանդիայի ազգ. օպեր. թատրոնի գլխ. դիրիժոր: Հեղինակ է 12 կանտատի, «Հայրենիքի ձայները» (1895) սիմֆ. ֆանտազիայի, դաշնամուր. երկերի, խմբերգերի, ռոմանսների, թատրոնի և կինոյի երաժշտության ևն:

ՅԱՍԱՄԱՆ, տես *Եղրևանի*:

ՅԱՍԱՈՒԼ (թյուրք.՝ պետ), պաշտոն. (XVI դ–ից) և զինվ. կոչում (XVIII դ–ից) կազակ. զորքերում: 1798-ին հավասարեցվել է հեծելազորի ռոտմիստրի կոչմանը:

ՅԱՍԵՆՍԿԻ (Jasieński) Բրունո (Վիկտոր Յակովլևիչ Զիսքինդ, Զիսման, 1901–1938), լեհ գրող: 1929-ից՝ ԽՍՀՄ-ում: Հեղինակ է «Ես այրում եմ Փարիզը» (ֆրանս., 1928, հայ.՝ 1931) ֆանտաստիկ վեպ-պամֆլետի, «Մանեկենների պարահանդես» (1931) ողբակատակերգության, «Մարդը փոխում է կաշին» (մաս 1–2, 1932–33) հաս., «Անտարբերների դավադրությունը» (հրտ.՝ 1956, անավարտ) հակաֆաշիստ. թեմաներով վեպերի: Անհիմն բռնադատվել է, գնդակահարվել:

ՅԱՍԿԵՎԻՉ Յան (Յաշկևիչ Հովհաննես, 1749–1809), լեհահայ բժիշկ, քիմիկոս, բնագետ: Բժշկագիտ. դ-ր (1775): Կրակովի գիտ-յունների կայսեր. և Ֆրանսիայի թագավոր. ակադ-ների թղթ. անդամ (1782–87), Կրակովի համալսարանի բնագիտ. խորհրդի նախագահ (1789–1809): Հիմնել է (1780) Կրակովի համալսարանի բնագիտ-յան, անատոմիայի և մանկաբարձության ամբիոնները, կլինիկ. հիվանդանոց, Կրակովի բուսաբ. այգին: Ուսումնասիրել է Կրակովի շրջանի երկրբ. կառուցվածքը, հիմնել օգտ. հանածոների թանգարան, 1789–90-ին ղեկավարել է Լեհաստանի ածխի հանքավայրերի հետախուզ. աշխ-ները, կազմել հանքաբան. քարտեզներ: Յ-ի կիսանդրին դրված է Կրակովի համալսարանի պատմության թանգարանում:

ՅԱՍՈՆ, *արգոնավորդների* առաջնորդը հուն. դից-յան մեջ, որոնց հետ ուղևորվել է *ոսկե գեղմը* բերելու:

ՅԱՍՊԵՐՍ (Jaspers) Կառլ (1883–1969), գերմանացի փիլ., հոգեբույժ, էկզիստենցիալիզմի ներկայացուցիչ: Փիլ-յան հիմն. խնդիրը համարել է «կեցության ծածկագրերի բացահայտումը», որոնք մարդուն հասու են դառնում սահման. իրավիճակներում (հիվանդություն, մահ, վախ ևն) կամ էլ երբ նա ազատ է ամենօրյա հոգսերից: Հեղինակ է «Փիլիսոփայություն» (հ. 1–3, 1932), «Պատմության ակունքները և նպատակը» (1949), «Մեծ փիլիսոփաններ» (հ. 1–2, 1957) և այլ աշխ-ների:

ՅԱՍՍԻ (Iasi), ք. Ռումինիայի հս-արլ-ում, համանուն ժուդեցի վարչ. կենտրոնը: Բն.՝ 290 հզ. (2011): Կան XV–XVII դդ-ի եկեղեցիներ և վանքեր:

ՅԱՍՍԻԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ Ալեքսանդր Կուզայի անվան, Ռումինիայի խոշորագույն համալսարաններից, հիմնադրվել է 1860-ին: 2015-ին ուներ ավելի քան 38 հզ. ուսանող:

ՅԱՍՍԻԻ ՀԱՇՏԱՏԹ-ՅՈՒՆ, Ռուսաստանի և Թուրքիայի միջև՝ ռուս-թուրք. 1787–91-ի պատերազմից հետո: Կնքվել է Յասսիում 1792-ին: Ղրիմը և Կուբանը տրվել են Ռուսաստանին, սահմանվել է ռուս-թուրք. նոր սահմանագիծ՝ Դնեստր գետի երկայնքով:

ՅԱՍՍԻ–ՔԻՇԻՆԵՎՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1944, ՀՄՊ-ի ժամանակ: 2-րդ և 3-րդ Ուկր. ռազմաճակատների խորհրդ. զորքերը Դանուբյան ռազմ. նավատորմերի համագործակցությամբ շրջապատել և ոչնչացրել են գերմ. «Հարավային Ուկրաինա» զորամիավորումը, ազատագրել Մոլդովան և Ռումինիայի արլ. մասը: Ռումինիան դուրս է եկել պատերազմից, և նրա նոր կառ-յունը օգոստ. 24-ին պատերազմ է հայտարարել Գերմանիային:

ՅԱՍՏՐՈՒՆ (Jastrun) Մեչիսլավ (1903–1983), լեհ գրող: Հեղինակ է «Հանդիպում ժամանակի ընթացքում» (1929), «Հեղեղ և լռություն» (1937), «Հիշողության նշանաբաններ» (1969), «Պատվող թատերաբեմ» (1977) բանաստեղծությունների ժող-ների, նաև Ա. Միցկևիչի (1949), Յ. Սլովացկու (1950), Յ. Կոխանովսկու (1954) մասին պատմակենսագր. վեպերի, «Օրագրեր և հուշեր»-ի (1955):

ՅԱՎՈՐԻՎՍԿԻ Վլադիմիր Ալեքսանդրովիչ (ծ. 1942), ուկրաինացի գրող, լրագրող, քաղ. գործիչ: 2001–11-ին՝ Ուկրաինայի ԳՄ նախագահ: Հեղինակ է գեղ-փաստագր. «Հավերժական Կորտելեսները» (1981) վիպակի, «Սեպտեմբերի բարձունքից» (1984) պատմվածքների ու վիպակների ժող-ի, «Շղթայական ռեակցիա» (1977), Չեռնոբիլի ողբերգության մասին «Օշինդրով Մարիան հարյուրամյակի վերջին» (1987), «Ճգնաժամ» (2000) վեպերի, «Երևակայական դիմանկարը» (1984) գործի: Հայ. է հրատարակվել «Գայլերի ֆերմա» (2007) պատմվածքների ժող-ը:

Ուկր. ԽՍՀ Տ. Շևչենկոյի անվ. Պետ. (1984), Դ. Զագուլայի անվ. (2005) մրց-ներ:

ՅԱՎՈՐՈՎ (Yavorov, Կրաչոլով, Kracholov) Պեյո (1878–1914), բուլղար բանաստեղծ: Սիմվոլիզմի սկզբնավորողը բուլղ. գրկ-յան մեջ: Հեղինակ է «Հայդուկային անուրջներ» (1908) հուշագր. երկի, «Բանաստեղծություններ» (1901), «Անքուն գիշերներ» (1907) ժող-ների, «Ջույզ գեղեցիկ աչքեր», «Սիրում եմ քեզ», «Դու կհագնես սպիտակ» և այլ շարքերի, «Վիտոշայի փեշերին» (1911, հայ.՝ 2009, հայկ. բեմ.՝ 1966–67), «Ինչպես է մարում արձագանքը որոտից հետո» (1912) սոցիալ-հոգեբ. թեմաներով դրամաների: 1894–96-ի հայկ. կոտորածների ծանր տպավորությամբ գրել է «Հայեր» (հայ.՝ 1899) բանաստեղծությունը, մամուլում հանդես եկել թուրք ջարդարարների հայահալած քաղ-յան դեմ: Հայ. հրատարակվել են նաև «Ամպհովանու հետքերով» (1992), «Բանաստեղծություններ» (2009) ժող-ները: Յ-ի անունով Երևանում անվանակոչվել է դպրոց:

ՅԱՎՈՐՍԿԻ Բոլեսլավ Լեոպոլդովիչ (1877–1942), ռուս. երաժշտագետ, դաշնակահար: Լադ. ռիթմի տեսության հիմնադիրը: Աշխ-ները վերաբերում են երաժշտության տեսությանը, կատարող. արվ-ին ևն:

ՅԱՎՐՅԱՆ Հարություն Արամայիսի (ծ. 1947), մարզ. գործիչ: ՀՀ վ. մ. (1990): ՀՀ ֆիզ. կուլտուրայի և ս. վ. գ. (2002): 1990–99-ին՝ ՀԱՕԿ-ի գլխ. քարտուղար, 2001–03-ին՝ աշխատակազմի ղեկ.: ՀԱՕԿ-ի «Սպորտ բոլորի համար» մրց. (1997):

ՅԱՎՐՈՒՄՅԱՆ, Յավրումով, Վլադիմիր Հակոբի (1922–1945), ավագ լեյտ.: ԽՄ հերոս (1945, հետմահու): ՀՄՊ-ին մասնակցել է որպես ավիահրետանու. դասակի, ապա՝ հրաձգ. վաշտի հրամ.: Հերոսի կոչման արժանացել է Ստոպնիցա ք-ի (Լեհաստան) մատույցներում իր հրաձգ. վաշտով թշնամու հենակետ. ամրությունները ոչնչացնելու համար:

ՅԱՎՐՈՒՅԱՆ Էդուարդ Գրիգորի (ծ. 1939), կենդանաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1991), պրոֆ. (1992): Աշխ-ները վերաբերում են մուֆլոնի կենսբ-յան, անդրկովկաս. և հյուսիսաֆրիկ. (Ալժիր, Թունիս) ձեռնաթևավորների էկոլոգիայի, դասակարգման, տարածվածության, չուի հարցերին: ՄԱԿ-ի՝ չվող, հազվագյուտ և պահպանվող կենդանիների կենսաբազմազանության էկոլոգիայի բաժանմունքի փոխնախագահ (1992–ից):

ՅԱՎՐՈՒՅԱՆ Վարդան Նիկողոսի (ծ.1940), ճարտարագետ-մեխանիկոս: Տեխ. գիտ. դ-ր (2004): Եղել է «Գյուղգիտարդ» ձեռն-յան տնօրեն (1994–98): Աշխ-ները վերաբերում են բուսաբուծ. մթերքների վերամշակման, մասնավորապես՝ չորացման տեխ. միջոցների մշակման տեխնոլոգիաներին: Յ-ի մշակած 25 տեխ. միջոցներ ներդրվել են արտադր-յան մեջ:

ՅԱՎՈՒՐՅԱՆ Ալբերտ Գառնիկի (1935–2007), կինոօպերատոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1977): ՀՀ ժող. արտիստ (1987): Պրոֆ. (1991): 1964-ից՝ Հայֆիլմի բեմադրող-օպերատոր: Գեղ. ֆիլմերից են՝ «Բարև, ես եմ» (1965), «Երկունք» (1977, երկուսն էլ ռեժ.՝ Ֆ. Դովլաթյան), «Երջանկության մեխանիկա» (1982, ռեժ.՝ Ն. Հովհաննիսյան), «Աշուղ Ղարիբ» (1988, ռեժ.՝ Ս. Փարաջանով) ևն, վավերագր.՝ «Յոթ երգ Հայաստանի մասին» (1967, ռեժ. Գ. Մելիք-Ավագյան), «Բոբո» (1991, գեղ. ղեկ.՝ Յ., նվիրված է Ս. Փարաջանովին):

ՀԽՍՀ Պետ. (1967, 1983), «Ոսկե դուկատ» (1975, Մանհայմ, Գերմանիա), ԽՍՀՄ Կինեմատոգրաֆիստների միության «Նիկե» (1989) մրց-ներ:

ՅԱՏՐՈԳԵՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, յատրոգենիաներ (< հուն. iatros – բժիշկ և *...գեն*), **պսիխոգենիաներ**, պայմանավորված են բուժաշխատողների անզգույշ արտահայտություններով կամ վարքագծով, որոնք մարդու մոտ ստեղծում են պատկերացում՝ որևէ հիվանդության առկայության կամ եղած հիվանդության խիստ ծանր լինելու մասին:

ՅԱՏՐՈՄԵԽԱՆԻԿԱ, ուղղություն XVI–XVII դդ-ի բժշկագիտ-յան մեջ, որը փորձում էր ֆիզիոլոգ. և ախտաբան. երևույթները բացատրել մեխանիկայի (ֆիզիկայի) օրենքներով:

ՅԱՏՐՈ-ՔԻՄԻԱ, **յատրոքիմիա**, ուղղություն բժշկագիտ-յան մեջ XVI–XVIII դդ-ում, երբ օրգանիզմում տեղի ունեցող կենսընթացները դիտել են որպես քիմ. երևույթներ, իսկ հիվանդությունները՝ քիմ. հավասարակշռության խանգարումներ, և առաջարկել դրանց բուժման համար քիմ. նյութեր:

ՅԱՐԱԼՅԱՆ Գեորգի Յակովի (1927–2011), գրաֆիկ, նկարիչ: Հեղինակ է պլակատների («Չիլի», 1983, «Կրծողի էվոլյուցիան», 1986), երգիծանկարների («Վերնիշաժ», 1975, «Ազգային ժողովում», 2001, ևն), մանկ., երգիծ, գեղ. գրքերի պատկերազարդումների և ձևավորումների (Զ. Ռոդարիի «Հեքիաթներ հեռախոսով», 1973, Մ. Մուրադյանի «Ուրախ երգիծանք», 1999, Ե. Չարենցի «Երկիր Նաիրի», 2012, ևն), ջրաներկ բնապատկերների: «Երգիծանք–69» ցուցահանդեսի մեդալ (Մոսկվա, 1969):

ՅԱՐԱԼՈՎ (Յարալյան) Յուրի Ստեփանի (1911–1983), ճարտ-յան տեսաբան-պատմաբան: Ճարտ-յան դ-ր (1967), պրոֆ.

(1971): ԽՍՀՄ ժող. ճարտ. (1981): Հեղինակ է «Հայաստանի ճարտարապետությունը» (1950), «Ռաֆայել Իսրայելյան» (բոլորը՝ ռուս., 1986) աշխ-ների, «Ճարտարապետության համընդհանուր պատմություն» (1979, ԽՍՀՄ Պետ. մրց.) բազմահատոր գրքի հրտ-յան ղեկ.:

ՅԱՐԱԿՈՒՅ (Yaracuy), նահանգ Վենեսուելայի հս-ում: Տարածքը՝ 7,1 հզ. *կմ*^{2}, բն.՝ 600,8 հզ. (2011): Վարչ. կենտրոնը՝ Սան Ֆելիպե:

ՅԱՐԱՄԻՇԵՎ Իվան Գրիգորի (1906–1979), ճարտարագիտատեխ. ծառայության գեներալ-մայոր (1952): 1926-ից ծառայել է Սևծով. նավատորմի ՌՕՈՒ-ում՝ որպես ավիաէսկադրիլիայի ավագ ճարտարագետ: Մասնակցել է ՀՄՊ-ին: Զորացրվել է 1968-ին:

ՅԱՐԱՆԳԱ, մորթեվաչ, Սիբիրի հյուսիսարևնակ ժողդ-ների շարժ. կացարան (շրջանաձև հատակագծով և կոնաձև տանիքով, կողքերից՝ ծածկված հս. եղջերուի մորթիներով):

ՅԱՐԴ (անգլ.՝ yard), երկ-յան միավոր անգլ. չափերի համակարգում, նշանակվում է Յա (yd): 1 Յա = 3 ֆուտ = 0,9144 *մ*:

ՅԱՐԴԼՄՅԱՆ Տաճատ (ծ. 1945), եկեղեց. գործիչ, խմբ.: ՎնտՄՄ անդամ (1970-ից), ծ. վրդ. (1991-ից): 1973–75-ին՝ «Հայ ընտանիք» ամսաթերթի, 1993–2000-ին՝ «Բազմավէպ» հանդեսի խմբ.: 1988–2004-ին՝ Լոս Անջելեսի Մխիթարյան կրթահամալիրի հիմնադիր-վարիչ: 2004-ից՝ ԱՄՆ-ի Արմ. թեմի առաջնորդ. ընդհանուր փոխանորդ: Հեղինակ է «Աստուած եւ ժամանակակից գրականութիւն» (1986), «Մխիթարեաններու նպաստը հայ մշակոյթին եւ հայագիտութեան» (1987), «Հայ եկեղեցւոյ Սբ առաքեալը. Գրիգոր Լուսաւորիչ» (1998), «Աստուածաշունչը եւ հայերը» (1998), «Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894–1896 և 1915–1925 տարիներուն» (2001) և այլ աշխ-ների:

ՅԱՐԴՈՒՄՅԱՆ (Յարդըմյան) Ռիչարդ Հայկի (1917–1985), կոմպոզիտոր: Փենսիլվանիայի Մերվիլ (1972) և Վիդեներ (1978) քոլեջների պատվ. դ-ր: Գրել է «Հայկական սյուիտ» (1937–54), «Պատարագ» (1967), «Աբրահամի պատմությունը» (1973)՝ երգչախմբի և նվագախմբի, «Նարեկ» (1983)՝ ձայնի, տավղի, գալարափողի, «Հրաշափառը» (1985)՝ երգեհոնի, երգչախմբի, նվագախմբի համար, ևն:

ՅԱՐԻԳԻՆ Իվան Սերգեևիչ (1948–1997), ռուս. ըմբշամարտիկ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1972), վ. մ. (1982): Օլիմպ. խաղերի (1972, 1976), աշխարհի (1973), Եվրոպայի (1972, 1975, 1976), ԽՍՀՄ (1970, 1973) չեմպիոն: 1981-ից՝ ազատ ոճի ըմբշամարտի ԽՍՀՄ հավաքականի մարզիչ, 1993-ից՝ Ռուսաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ:

ՅԱՐԽՈՒՇՏԱ (պարսկ.՝ յար – ընկեր, խշտիկ – կարճ նիզակ), տղամարդկանց ռազմ. պար (զույգպար) Մուշի և Սասունի ազգագր. շրջաններում: Երաժշտ. չափը՝ 2/4: Կատարում են 2 շարքով դեմ դիմաց կանգնած՝ դհոլ-զուռնայի նվագակցությամբ: Դասավորությունը կլոր է (երբեմն՝ կիսաշրջանաձև), առանձնահատկությունը՝ շարքերի կանգնածները պարելու ընթացքում ձեռքերի ափերով զարկում են միմյանց:

ՅԱՐՄԱՆ (Եարման) Արսեն Միհրանի (ծ. 1949), պատմաբան, հրտ.: 2010-ից՝ Կ. Պոլսի «Սուրբ Փրկիչ» պարբ-ի հրտ-խմբ.: Հեղինակ է «Հայերի ներդրումը օսմանյան առողջապահության մեջ և Սուրբ Փրկիչ հայկական ազգային հիվանդանոցի պատմությունը» (2001), համահեղ.՝ «Բալու-Խարբերդ, 1878» (2010), «Մահմուդ Բ սուլթանը և Գազազ Արթին ամիրան» (2013, երեքն էլ՝ թուրք.) աշխ-ների: Հրատարակել է պատմագիտ. և աղբյուրագիտ. երկեր, Սբ Փրկիչ ազգ. հիվանդանոցի տարեգրքի 1900–10-ի հայ. պատճենը (փոքր ձևաչափով, հ. 1–11, 2012), Արամ Քերոբյանի և Ալթուղ Յըլմազի «Օսմանյան դասական երաժշտությունն ու հայ ստեղծագործողները» (հ. 1–2, 2010) մենագրությունը, իր առաջաբաններով՝ Պողոս Նաթանյանի «Սվազ. 1877» (2008, բոլորը՝ թուրք) աշխ-ների:

ՅԱՐՄԱՏՈՎ Քամիլ Յարմատովիչ (1903–1978), ուզբեկ դերասան, կինոռեժ.: Տաջիկ. ԽՍՀ (1939), Ուզբ. ԽՍՀ (1944) արվ. վաստ. գործիչ: Ուզբ. ԽՍՀ (1955), ԽՍՀՄ (1959) ժող. արտիստ: Սոց. աշխ. հերոս (1973): Նկարահանել է «Ալիշեր Նավոի» (1948), «Ավիցեննա» (1957), «Փոթորիկ Ասիայում» (1965), «Հեղափոխության հեծյալները» (1969), «Հեռու մոտիկ տարիներ» (1977) ևն: 1957-ից՝ «Ուզբեկֆիլմի» գեղ. ղեկ. (1979-ից՝ Յ-ի անվ.): ԽՍՀՄ Պետ. մրց. (1948):

ՅԱՐՄՈԼՆԻԿ Լեոնիդ Իսահակովիչ (ծ. 1954), ռուս. դերասան: 1976–84-ին՝ Մոսկվայի Տագանկայի թատրոնի դերասան: Էստրադայում հանդես է եկել պարոդիաներով, պլաստիկ էտյուդներով: Նկարահանվել է «Խուզարկու», «Խելագարները», «Մոսկովյան արձակուրդներ», «Նաստյա», «Գիր ու ղուշ», «Խաչմերուկ» և այլ ֆիլմերում: ՌԴ Պետ. մրց. (2000):

ՅԱՐՈՆ Գրիգորի Մարկովիչ (1893–1963), օպերետի ռուս. արտիստ, ռեժ.: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1940): Մոսկվայի Օպերետի թատրոնի հիմնադիր-դերասաններից (1927), ռեժ., գեղ. մասի ղեկ. (1927–45, ընդհատումներով): Հանդես է եկել բուֆֆոն-էքսցենտրիկ դերերով: Կատարյալ տիրապետել է պարին, ակրոբատիկ տեխնիկայի և կատակերգ. իմպրովիզացիային: Նկարահանվել է կինոյում:

ՅԱՐՈՇԵՆԿՈ Նիկոլայ Ալեքսանդրովիչ (1846–1898), ռուս. գեղանկարիչ: Գեն-մայոր (1892): Դիմանկարներում («Ուսանող», 1881, «Ուսանողուհի», 1883, «Պ. Ա. Ստրեպետովա», 1884, ևն), ժանր. կոմպոզիցիաներում («Ամենուրեք կյանք է», 1888, ևն) ձգտել է մարմնավորել 1870–90-ական թթ-ի ռուս հաս-յան ժողովրդավար. շերտերի իղձերը: Ստեղծել է նաև բնանկարներ:

ՅԱՐՈՍԼԱՎ ՎԼԱԴԻՄԻՐՈՎԻՉ Իմաստուն (մոտ 980–1054), Կիևի (1016–18, 1019–54) մեծ իշխան: *Վլադիմիր Սվյատոսլավիչի* որդին: Միավորել է գրեթե բոլոր հինռուս. հողերը: Արշավել է Լեհաստանի, լիտվ. ցեղերի դեմ (1030–40-ին), ջախջախել պեչենեգներին (1036): Նրա ղեկավարությամբ կազմվել է «Ռուսական պրավդա» օրենսգիրքը: Յ. Վ. ազգակց. կապեր է ունեցել եվրոպ. մի շարք երկրների կառավարողների հետ:

ՅԱՐՈՍԼԱՎԼ, ք. ՌԴ-ում, Յարոսլավլի մարզի կենտրոնը: Նվ ինգստ՝ Վոլգայի ափին: Բն.՝ 603,9 հզ. (2015): Տնտ-յան մեջ առաջատար են մեքենաշին., քիմ., նավթավերամշակման և թեթև արդ-յան ճյուղերը, էներգետիկան: Ունի 5 բուհ (այդ թվում՝ համալսարան), 3 թատրոն, թանգարաններ ևն: Հիմնադրվել է 1010-ին: XIII–XVII դդ-ի ռուս. ճարտ-յան և կերպարվ-ի խոշոր կենտրոններից է: Պահպանված հնագույն հուշարձանները (XVI դ.) կենտրոնացած են Սպասո-Պրեոբրաժենսկի մենաստանում: Պատմ. կենտրոնում են Նիկոլա Նաղևինի (1620–21), Եղիա Մարգարեի (1647–50), Հովհան Ոսկեբերանի (1649–54, Կորովնիկում) և այլ եկեղեցիներ, Մետրոպոլիտի քարաշեն պալատները (1680) ևն:

ՅԱՐՈՍԼԱՎԼԻ ՄԱՐԶ, ՌԴ վտմ: Տարածքը՝ 31,2 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,3 մլն (2015): Ունի 17 շրջան, 11 քաղաք, 13 քտա (2009): Կենտրոնը՝ *Յարոսլավլ*: Գլխ. գետը՝ Վոլգա: Խոշոր լճերն են Ներոն և Պլեշչեևոն: ՌԴ արդ. զարգացած մարզերից է: Արդյունահանում է տորֆ: Գոտ-յունը մասնագիտացված է կարտոֆիլի, բանջարեղենի արտադր-յան ու կաթնատու անասնապահության ուղղությամբ: Վոլգայով և Ռիբինսկի ջրամբարով նավարկելի ուղիների երկ.՝ 251 *կմ*:

ՅԱՐՈՍԼԱՎԼՅԱՆ ՏԱՎԱՐ, կաթնատու ցեղ: Ստեղծվել է XIX դ-ում՝ տեղ. տավարի բարելավման և «ինքն իր մեջ» բուծման ուղիով: Յուղերի կ. զ.՝ 800–900 *կգ*, կովերինը՝ 450–500 *կգ*: Տարեկան միջին կաթնատվությունը՝ 2700–3000 *կգ* (ռեկորդայինը՝ 9267 *կգ*):

ՅԱՐՎԵՏ (Järvet) Յուրի (1919–1995), էստոնացի դերասան: Էստ. ԽՍՀ (1969), ԽՍՀՄ (1975) ժող. արտիստ: 1952–92-ին (ընդհատումներով)՝ Տալլինի էստ. դրամատիկ. թատրոնի դերասան: Վերամարմնավորման վարպետ էր (Կլավդիոս՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», Պոպրիշչին՝ «Խելագարի հիշատակարանը»՝ ըստ Ն. Վ. Գոգոլի, մոնոներկայացում): Նկարահանվել է կինոյում («Լիր արքա», «Սոլյարիս», «Ափեր», հեռուստաֆիլմ, ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1981):

ՅԱՐՑԵՎԱ Վիկտորյա Նիկոլաևնա (1906–1999), ռուս. լեզվաբան: ՌԳԱ թղթ. անդամ (1968): 1971–77-ին՝ ԽՍՀՄ ԳԱ լեզվագիտյան ինստ-ի տնօրեն: 1982–99-ին՝ «ԽՍՀՄ ԳԱ տեղեկագրեր: Գրականության և լեզվի շարք» (ռուս.) ամսագրի, «Լեզվաբանական հանրագիտական բառարան»-ի (1990, 2-րդ հրտ.՝ 2002) գլխ. խմբ.: Յ-ի նախաձեռնությամբ պատրաստվել է «Աշխարհի լեզուները» (հ. 1–20…, 2015-ից) հանրագիտարանը: ՌԴ Պետ. մրց. (1995):

ՅԱՐՈՒԶԵԼՍԿԻ (Jaruzelski) Վոյցեխ Վիտոլդ (1923–2014), Լեհաստանի 1-ին նախագահը՝ 1989–90-ին: ՋՈՒ գեն. (1973): 1985–89-ին՝ Լեհաստանի Պետ. խորհրդի, ՊԿ նախագահ և Լեհաստանի ՋՈՒ գերագույն գլխ. հրամ.: 1981–85-ին՝ Լեհաստանի վարչապետ:

ՅԱՐՈՒՄ (երկրբ.), շերտագր. ընդհ. սանդղակի ստորաբաժանում. միավորում է այն նստվածքները, որոնք առաջացել են 1 երկրբ. դարաշրջանում, համապատասխանում է երկրբ. զարգացման որոշակի փուլի:

ՅԱՐՔԵՆԴ, գետ Չինաստանում: Երկ.՝ 1068 *կմ*, ավազանը՝ 81,4 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 170 *մ*^{3}/*վ*: Հոսում է Թարիմի հարթավայրի ծայր հս-արմ-ով:

ՅԱՈՒՆԴԵ (Yaounde), *Կամերունի* մայրաքաղաքը, Կենտր. տարածաշրջանի և Մֆունդի դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 2,4 մլն (2012): Ունի միջազգ. օդանավակայան, համալսարան: Առևտրատրանսպորտ. կենտրոն է:

«ՅԱՒԵՐԺԱՀԱՐՍ», գրկ-յան, արվ-ի, գիտ-յան կիսամսյա հանդես (1862, Զմյուռնիա): Տնօրեն-խմբ.՝ Սարգիս Փափազյան:

ՅԱՓՆՋԻ, այծենակաճ, անթև, ուղղանկյուն ուսերով, լայն քղանցքով երկար

թիկնոց: Կարում են այծամազե թաղիքից կամ այծի չխուզած մորթուց:

ՅԱՓՈՒՃՅԱՆ Ավետիս Հովհաննեսի (ծ. 1931), պատմաբան, մշակույթի գործիչ, խմբ.: Պատմ. գիտ. թեկնածու (1974): 1967–90-ին՝ «*Արև*» (Կահիրե) օրաթերթի, 1993-ից՝ «Միութիւն» (Սիդնեյ) ամսաթերթի հայ. բաժնի խմբ.: Հեղինակ է «Հայ ժողովուրդին մեծ գոյամարտը…» (1968), «1918 թուականի թուրքական արշաւանքը Հայաստան եւ Բաթումի պայմանագիրը» (1974), «Հայկական հարցին ծագումը» (1979), «Եգիպտահայ մշակույթի պատմութիւն» (1981) և այլ պատմագիտ. աշխ-ների, «Կեանքէս ճակատագրական երեք հանգրուաններ» (2012) և այլ հուշագրությունների:

ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշան (2005):

ՅԵՅԼԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ԱՄՆ-ի բուհերից, հիմնադրվել է 1701-ին Նյու Հեյվենում (Քոնեքթիքութ նահգ.)՝ որպես Կոլեգիալ դպրոց: XIX դ-ի 1-ին կեսից՝ համալսարան: 2015-ին ուներ ավելի քան 11 հզ. ուսանող:

«ՅԵՆԱՐԱՆ», ազգ., քաղ. շաբաթաթերթ [1959–62, Նիկոզիա (Կիպրոս)]: Արտոնատեր-խմբ.՝ Սեդրակ Կեպենյան:

ՅԵՆՍ (Jens) Վալտեր (1923–2013), գերմանացի գրող, գրաքննադատ: Հեղինակ է «Ոչ: Ամբաստանյալների աշխարհը» (1950) հակաուտոպ., «Պարոն մաեստրո» (1963) ինտելեկտուալ և այլ վեպերի, «Ֆրաու Թոմաս Ման: Կատարինա Փրինգսհայմի կյանքը» (2003, Ի. Յենսի հետ) կենսագր. երկի:

ՅԵՆՍԵՆ (Jensen) Յոհաննես Վիլհելմ (1873–1950), դանիացի գրող: Հեղինակ է «Հիմերլանդյան պատմություններ» (1898–1933) նովելների շարքի, «Արքայի տապալումը» (մաս 1–3, 1900–01), «Երկար ճանապարհ» (մաս 1–6, 1908–22) պատմավեպերի, «Առասպելներ» (գիրք 1–9, 1907–1944) այլաբան. արձակ մանրապատումների, «Գոթական վերածնունդ» (1901) էսսեների ժող-ի: Նոբելյան մրց. (1944):

ՅԻԹՍ (Yeats) Ուիլյամ Բաթլեր (1865–1939), իռլանդացի բանաստեղծ, դրամատուրգ: 1890-ական թթ-ի «Իռլանդական վերածնունդ» մշակութ. շարժման ոգեշնչողը: Հեղինակ է «Օիսինի դեգերումները և այլ բանաստեղծություններ» (1889), «Կելտական մթնշաղ» (1893) պոեմների, «Քամին եղեգնուտում» (1889), «Պատասխանատվություն» (1916) բանաստեղծությունների ժող-ների, «Քեթլինը՝ Հուլիենի դուստրը» (1902) հայրենասիր., նաև *Նոռ* ճապոն. թատրոնի ավանդույթներով դիմակ-պիեսների: Նոբելյան մրց. (1923):

ՅԻՄԱՅ, Հիսայ Հոռմկլացի, XV դ-ի ճարտ.: 1499-ին նորոգել է Հալեպի Քառասուն մանկանց եկեղեցու խորանները, շուրջը կառուցել բնակելի սենյակներ, հյուրատուն, ամառանոց:

ՅԻՎԱՆ Կիրյա (Կիրյա Իվան Իվանով, 1909–1943), մարի բանաստեղծ, կինոդերասան: Հեղինակ է «Մենք հարվածայիններ ենք» (1931, Մ. Օլիկի հետ), «Հեղափոխության ձայնով եմ ես երգում» (1932), «Ծննդյան օրը» (1935) բանաստեղծությունների ժող-ների: «Կյանքի ուղեգիր» ֆիլմում խաղացել է Մուստաֆայի դերը: 1937-ից ձերբակալվել է. մահացել է ճամբարում:

ՅԻՐԱՍԵԿ (Jirásek), **Իրասեկ**, Ալոիս (1851–1930), չեխ գրող: Հեղինակ է «Չեխական հինավուրց զրույցներ» (1894, հայ.՝ 1955), «Սկալականները» (1875), նաև «Վերջը և սկիզբը» (1882), «Հոսանքների միջև» (հ. 1–3, 1887–90), «Ընդդեմ բոլորի» (1893), «Եղբայրություն» (հ. 1–3, 1898–1908), «Հուսյան արքան» (1916–20), չեխ. ազգ. վերածննդի ժամանակաշրջանը պատկերող «Դքսի պալատում» (1877), «Ֆ. Լ. Վեկ» (հ. 1–5, 1888–1906) վեպերի ու վիպակների, սոցիալ-կենցաղ. դրամաների:

ՅՈԳԱ (սանսկրիտ՝ yóga – կապ, միացում, ուժերի լարում, կենտրոնացում), 1. մարդու հոգեկանի և ֆիզիոլոգիայի կառավարման ուսմունք և մեթոդ, հնդ. կրոն. և փիլ. համակարգերի բաղադրիչ տարր: Նպատակը «ազատության» վիճակին (*մոկշա* կամ *նիրվանա*) հասնելն է: Յ. ընդունում է մարդու մեջ անգիտակցական ուժերի գոյությունը և դրանց կառավարման հոգեր. հնարավորությունը համակարգված ֆիզ. վարժություններով: 2. Հինհնդ. փիլ-յան 6 ուղղափառ համակարգերից: Հիմնադրել է *Պատանջալին* «Յո-սուտրա»-ներում (մ. թ. ա. II դ.), իմաստավորել է բնությունը և Յ-ի մեթոդների գործառույթները, դրանց կիրառման փուլերը նև:

ՅՈԳԱՉԱՐԱ, բուդդայականության 2 հիմն. դպրոցներից մեկի՝ *մահայանայի* հետևորդները: Նշանավոր ներկայացուցիչներից են Ասանգան (IV դ.), Վասուբանդհուն (V դ.), Դիգնագան (V–VI դդ.) և Դհարմակիրտին (VII դ.) և ուր.: Հստակեցնելով բուդդայականության մեջ անհատի հոգեկան կեցության միակ ռեալության մասին գաղափարը՝ Յ-ները զարգացրել են մաքուր գիտակցության (վիջեյանա) բացառիկ նշանակության հայեցակարգը, որը վերացարկված է որևէ բովանդակությունից: Այդ վիճակին՝ բոդհիին (բառացի՝ պայծառացում) կամ նիրվանային հասնելը յոգայի գլխ. նպատակներից է:

ՅՈԴ (լատ.՝ Iodum, հուն.՝ Jodes – մանուշակագույն), I, տարրերի պարբեր. համակարգի VII խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 53, ա. զ.՝ 126,9044: Հալոգեն է: Ստացման հիմն. աղբյուրն օվկ-ների և ծովերի ջուրն է: Յ. մուգ մոխրամանուշակագույն, թույլ մետաղ. փայլով, բյուրեղ. նյութ է, խտ.՝ 4,94 $գ/սմ^3$, $t_{հալ.}$՝ 113,5°C, $t_{եռ.}$՝ 184,35°C: Հեշտ ցնդում է, դանդաղ տաքացնելիս սուբլիմվում: Վատ է լուծվում ջրում, լավ՝ օրգ. լուծիչներում: Քիմիապես ակտիվ ոչ մետաղ է: Գոլորշիները թունավոր են և գրգռում են լորձաթաղանթը: Յ. և նրա միացություններն օգտագործվում են բժշկության մեջ՝ որպես հականասկային, հակաբորբոք. և ցավը մեղմացնող միջոցներ: Վահանաձև գեղձի հիվանդության ախտորոշման և բուժման համար օգտագործում են Յ-ի ճառագայթաակտիվ իզոտոպը:

ՅՈԴԱՅԻՆ ԹԻՎ, 100 *գ* օրգ. նյութին միացող *յոդի* քանակը՝ *գ*-ներով: Յ. թ. օրգ. չհագեցած միացություններում կրկնակի կապերի պարունակության ցուցիչ է:

ՅՈԴԱՉԱՓԻԹՅՈՒՆ, վերլուծության տիտրաչափ. եղանակ. հիմնված է հետազոտվող նյութի *յոդով* օքսիդացման վրա: Ներառում է ուղիղ (I_2-ի լուծույթով KI-ի ջր. լուծույթում) և հակառակ (I_2-ի ավելցուկը տիտրում են $Na_2S_2O_3$-ի լուծույթով) տիտրման եղանակները:

ՅՈԴԱՋՐԱԾԻՆ, HI, խիստ անդուր հոտով, օդում ծխացող, անգույն գազ է: Լավ լուծվում է ջրում: Վերականգնիչ է: Ջր. լուծույթը *յոդաջրածնական թթուն* է:

ՅՈԴԱՋՐԱԾՆԱԿԱՆ ԹԹՈՒ, *յոդաջրածնի* ջր. լուծույթը, ուժեղ թթու է (ավելի ուժեղ՝ քան HCl-ը, HBr-ը): Անգույն հեղուկ է, օդում լույսի տակ դանդաղ օքսիդանում է և դեղնում: Աղերը կոչվում են *յոդիդներ*:

ՅՈԴԻԴՆԵՐ, յոդի քիմ. միացությունները մյուս տարրերի հետ: Մետաղների Յ. *յոդաջրածնական թթվի* աղերն են, օգտագործվում են լուսանկարչության և բժշկության մեջ (տես *Արծաթի հալոգենիդներ, Կալիումի յոդիդ, Նատրիումի յոդիդ*) և համապատասխան յոդիդների ջերմ. քայքայմամբ գերմաքուր Ti, Hf, Zr և այլ մետաղներ ստանալու համար:

ՅՈԴԼ (Jodl) Ալֆրեդ (1890–1946), գերմանացի գեն-գնդ. (1944): 1939–45-ին՝ ԶՈՒ-ի օպերատիվ ղեկավարման շտաբի պետ, Հիտլերի գլխ. ռազմ. խորհրդատուն: Մեղադրվել է բռնագրավված տարածքների խաղաղ բնակչության զանգված. ոչնչացման համար: Նյուրնբերգյան դատավարությամբ դատապարտվել է մահապատժի:

ՅՈԴՈՖՈՐՄ, եռյոդմեթան, CHI_3, հականեխ. միջոց: Տհամ հոտով, հեշտ ցնդող, դեղնավուն փոշի է, $t_{հալ.}$՝ 119°C: Վատ է լուծվում ջրում և սպիրտում: Յ-ի քսուքն օգտագործվում է վարակային վերքերը և խոցերը բուժելու համար:

«ՅՈՒԹ ԱԶԱՏ ԱՐՎԵՍՏՆԵՐ», միջնադարի դպրոցներում և համալսարաններում դասավանդվող առարկաներ: Ներառել է եռյակ (քերական., ճարտասանություն, դիալեկտիկա) և քառյակ (թվաբան., երկրչափ-յուն, աստղագիտ-յուն, երաժշտություն) գիտ-յուններ: Դասավանդվել են նաև միջնադար. հայաստանում:

ՅՈՒԹՆԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ 1756–63, մի կողմից՝ Ավստրիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Իսպանիայի, Սաքսոնիայի, Շվեդիայի, մյուս կողմից՝ Պրուսիայի, Մեծ Բրիտանիայի և Պորտուգալիայի միջև: Ծագել է գաղութների համար անգլո-ֆրանս. պայքարի սրման և Ավստրիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի շահերին հակոտնյա Պրուսիայի զավթող. քաղ. հետևանքով: 1763-ի փետր. 10-ին ստորագրված Փարիզի պայմանագրով Անգլիային են անցել նախկին ֆրանս. գաղութներ Կանադան ու Արլ. Լուիզիանան (Հս. Ամերիկա) և մի քանի կղզիներ: Իսպանիային անցած նախկին ֆրանս. գաղութ Արմ. Լուիզիանայից Անգլիան ստացել է Ֆլորիդան: Ավստրիայի, Պրուսիայի և Սաքսոնիայի միջև 1763-ի փետր. 15-ին ստորագրված պայմանագրով Պրուսիային է անցել Սիլեզիան:

ՅՈՒԹՆԵՂԲԱՐՅԱՆ (Յութնեղբայրյան) Մկրտիչ (1880-ական թթ.–1915), ազգ-ազատագր. պայքարի գործիչ: 1915-ի սեպտ–հոկտ-ին Ուրֆայի Զինվ. խորհրդի հետ ղեկավարել է տեղի հայերի ինքնապաշտպ. մարտերը: Սակայն թվով գերակշիռ թուրքերը ճնշել են հայերի դիմադրությունը: Նոյեմբ. կեսերին բազմաթիվ հայեր, նաև վիրավոր Յ. թշնամու ձեռքը չընկնելու համար ինքնասպան են եղել:

ՅՈՒԹՆՏԵՐԵՎՈՒԿ (Potentilla eroeta), **աղպատ**, վարդազգիների ընտանիքի խոտաբույսերի, թփերի և կիսաթփերի ցեղ: Հայտնի է ավելի քան 550 տեսակ՝ արևադարձներում և մերձարևադարձներում: Մի շարք տեսակներ դեղաբույսեր են և գեղազարդիչ (մշակվում են): Մեղրատու են:

ՅՈՓՆՓՈՐԱԿՅԱՆ ԲԱՑԻՆՔ, գվո Փայտակարան նինգ–ում: Եղել է *Արշակունիների* սրբատեղիներից: Ըստ Ագաթանգեղոսի՝ Հայոց Խոսրով Ա թագավորը հրամայել է ուխտի գնալ «յոթ մեհյանների բագիններին» և պաշտամունք մատուցել աստվածների կուռքերին (այստեղից էլ՝ գվո–ի անվանումը): V դ–ի 2–րդ կեսին Փայտակարանի մյուս գվո–ների հետ անցել է Ատրպատականին:

ՅՈԼՅԱՆ Էդուարդ Վահանի (1926–2009), օդաչու, կոնստրուկտոր, գնդ.: ԽՍՀՄ վաստ. փորձարկող օդաչու (1967): ԽՄ հերոս (1971): 1982–97–ին՝ Արտեմ *Միկոյանի* ԿԲ–ի առաջատար կոնստրուկտոր: Փորձարկել է մարտ. և կործանիչ, աշխարհում առաջին գերձայն. մարդատար Տու–144 ինքնաթիռները, մասնակցել Տու–22 ռմբակոծիչի, Տու–124, –134, –154 մարդատար ինքնաթիռների և դրանց վերափոխված տեսակների փորձարկումներին:

Լենինի, ԽՍՀՄ Կարմիր դրոշի, Կարմիր աստղի շքանշաններ:

ՅՈԼՅԱՆ Իզաբելա Ռուբենի (1928–1996), երաժշտագետ: Ռուբեն *Յոլյանի* դուստրը: Արվեստագիտ. դ–ր (1986): Մոսկվայի կոնսերվատորիայի պրոֆ. (1989): Հեղինակ է «Գրիգոր Եղիազարյան» (1968), «Կոմիտաս» (1969), «Ալեքսանդր Հարությունյան» (1962), «Ականարկներ արաբական երաժշտության» (1977), «Արաբական Արևելքի ավանդական երաժշտությունը» (1990, վերջին 3–ը՝ ռուս.) աշխ–ների:

ՅՈԼՅԱՆ Համո Սերգեյի (1903–1965), պետ. և ռազմ. գործիչ: Ճարտարագիտահրետան. ծառայության գնդ–մայոր (1944): Սոց. աշխ. հերոս (1942): 1930–ից՝ Բաքվի Ս. Կիրովի անվ., 1937–40–ին՝ Մոսկվայի 32–րդ, 1940–ից՝ 92–րդ հրետան. (ք. Գորկի) գործարանների տնօրեն (արտադրվել են միջուկ. ռազմամթերք, հեռագայում՝ ուրան. ձողեր): 1950–55–ին՝ ԽՍՀՄ պաշտպ. արդ–յան փոխնախարար, 1951–53–ին, միաժամանակ՝ Մոսկվայի ՀՕՊ–ի ստեղծող ԿԲ–1–ի պետ: Նրա ղեկավարությամբ ստեղծվել են հրետան. զենքի նոր, կատարելագործված տեսակներ, մշակվել և արտադրվել արդ. ատոմ. ռեակտորների սարքավորումներ, հրթիռ. զենքի նոր տեսակներ:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1946, 1949, 1951), Լենինի (1941, 1942, 1944, 1945), Կարմիր դրոշի (1939, 1949), Վ. Ա. Սուվորովի 1–ին աստիճանի (1945), ՀՄՊ 1–ին աստիճանի շքանշաններ:

ՅՈԼՅԱՆ Ռուբեն Հովսեփի (1894–1955), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1936), պրոֆ. (1936): ԽՍՀՄ ԲԳԱ թղթ. անդամ (1946): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1940): Իզաբելա *Յոլյանի* հայրը: Աշխ–ները վերաբերում են արյան փոխներարկման, կլինիկ. վիրաբուժության, վնասվածքաբանության, ուռուցքաբանության, անեսթեզիոլոգիայի, երկրամաս. ախտաբանության, վնասվածք. շոկի և մի շարք այլ խնդիրների:

ՀԽՍՀ վիրաբույժների ընկ–յան նախագահ (1937–54):

Յ–ի անունով է կոչվել (1955) Երևանի արյունաբանության և արյան փոխներարկման ինստ–ը (այժմ՝ Արյունաբան. կենտրոն ՓԲԸ):

ՅՈԼՅԱՆ Սուրեն Լևոնի (1923–1994), ռևմատոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (1970), պրոֆ. (1973): Առաջարկել է սրտի երկփեղկ փականի նեղացման և սրտի նշիկածին ախտահարումների նոր դասակարգում, ռևմատիզմի բուժման եղանակներ: ՀՀ ռևմատոլոգների ընկ–յան նախագահ (1980–94):

ՅՈԼՉՅԱՆ Ռոբերտ Ալեքսանդրի (1917–2001), հարված. գործիքներ նվագող: ՀՀ վաստ. արտիստ (1950): 1939–ից՝ Հայաստանի պետ. ջազ. նվագախմբում: Հանդես է եկել նաև որպես երգիչ՝ քաղաք. («Աղջի, հագինդ չիթ ա» ևն), ժող. և հատուկ իր համար գրված («Թմբկահարի երգը» ևն) երգերով:

ՅՈԿԱԻ (Jókai) Մոր (1825–1904), հունգար գրող: Հեղինակ է հունգ. ազգ–ազատագր. պայքարին նվիրված «Քարսիրտ մարդու որդիները» (1869), «Հունգարական նարոր» (1853), «Երբ մենք կծերանանք» (1865), «Ոսկե մարդը» (1872), «Կալանավոր Ռաբին» (1879), «Արքայիկներ» (1885) և այլ վեպերի:

ՅՈԿԱԻՏԻ (Yokaiti), ք. Ճապոնիայի Հոնսյու կղզում, Նագոյայի արվարձանը: Բն.՝ 306 հզ. (2014):

ՅՈԿՈՀԱՄԱ (Yokohama), ք. Ճապոնիայի Հոնսյու կղզում: Երկրի խոշորագույն արտաքին առևտր. նվինգստ–ը (տարեկան բեռնաշրջանառությունը՝ 100 մլն *տ*): Կանաիավա պրեֆեկտուրայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 3,7 մլն (2014): Զարգացած են մեքենաշինությունը, մետաղագործությունը, նավթաքիմիան, միջուկ. արդ–յան ճյուղերը:

ՅՈԿՈՒԲՈՆԻՍ (Jokūbonis) Գեդիմինաս (1927–2006), լիտվացի քանդ.: Լիտվ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1965): ԽՍՀՄ ժող. նկարիչ (1987): ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի ակադ. (1983): Ստեղծագործել է մոնումենտալ և հաստոց. քանդ–յան բնագավառներում (Ֆաշիզմի զոհերի հուշարձանը՝ Պիրչյուպիս գ–ում, 1960, Յ. Վենոժինսկիսի դիմաքանդակը, 1964, ևն):

Լենինյան մրց. (1963):

ՅՈՀԱՆ, VII դ–ի ճարտ., Զվարթնոցի կառուցողներից: Յ–ի և նրա գործընկերների պահպանված դիմաքանդակներից (տաճարի առաջին հարկի կամարաղեղների միջև) միայն Յ–ի անունն է փորագրված, որի շնորհիվ ենթադրվում է, որ նա է եղել Զվարթնոցի գլխ. վարպետ–ճարտ–ը:

ՅՈՀԱՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ, XIII դ–ի ճարտ.: Կառուցել է *Աստվածընկալ վանքի* գավիթը, որը 4 սյուներով և 8 որմնասյուներով կենտրոնակազմ տիպի կառույց է: Ունի հարուստ հարդարանքով գլխ. շքամուտք: Ենթադրվում է, որ կառուցել է նաև վանքի գլխ.՝ Կաթողիկե եկեղեցին (1244):

ՅՈՀԱՆՆԵՍԲՈՒՐԳ (Johannesburg), ք. ՀԱՀ–ում, երկրի գլխ. արդ. և ֆին., ոսկու և ալմաստի առևտրի խոշոր կենտրոն: Բն.՝ 4,5 մլն (2011): 2000–ին քաղաքից և հարակից տարածքներից կազմավորվել է նոր վտմ՝ Յոհաննեսբուրգի քաղաք. մարզ: Կան լեռնահանք., մետաղամշակման, քիմ. և այլ ձեռն–ներ: Ունի միջազգ. օդանավակայան, համալսարան, աստղադիտարան: Յ–ում 2010–ին անցկացվել են ֆուտբոլի աշխարհի առաջնության խաղեր: Հիմնադրվել է 1886–ին:

ՅՈՀԱՆՍԵՆ (Iohannsen) Վիլհելմ Լյուդվիգ (1857–1927), դանիացի կենսաբան: Ժամանակակից գենետիկայի հիմնադիրներից: ՌԳԱ արտ. թղթ. անդամ (1924): Ներմուծել է «գեն», «գենետիկա», «գենոտիպ» և «ֆենոտիպ» եզրույթները: Ստեղծել է մաքուր գծերի վերաբերյալ ուսմունք, դրել է ընտրասերման ժամանակակից սկզբունքների հիմքը:

ՅՈՀԱՆՍԵՆ (Johansen) Ֆրեդերիկ Յալմար (1867–1913), նորվեգացի բևեռախույզ: Մասնակցել է «Ֆրամ» նավով գիտարշավին (1893–96): Ֆ. *Նանսենի* հետ դահուկներով հասել է մինչև հս. լայն–յան 86°14′ զուգահեռական: Եղել է Ռ. *Ամունդսենի* 1910–12–ին Հվ. բևեռ հասած արշավախմբում:

ՅՈՀԱՆՍՈՆ (Iohansson) Ալմա (1880–1974), շվեդ միսիոներուհի: 1901–15–ին ծառայել է Արմ. Հայաստանում տեղակայված գերմ. միսիոներ. հաստատություններում և որբանոցներում: 1920–22–ին Կ. Պոլսում օգնել է հայ որբերին, 1923–ին Սալոնիկում (Հունաստան)՝ հայ գաղթականներին: Տիրապետել է հայ–ին, հեղինակ է «Աքսորյալ ժողովուրդ մը» (1930, 2008՝ հայ., ռուս., անգլ.), «Հայ աքսորականներու կյանքը» (1931) գրքույկների, որոնք Հայոց ցեղասպանությունը փաստող ականատեսի վկայություններ են: 2011–ին Յ–ի գերեզմանից վերցված հողով սափոր է ամփոփվել Մեծ եղեռնի հուշահամալիրի հուշապատում:

ՅՈՄ, գետ Թաիլանդում: Երկ.՝ 600 *կմ*, ավազանը՝ մոտ 55 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 430 *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Ֆիպանամ լ–ից, լուղարկելի է:

ՅՈՄ ԿԻՊՈՒՐ (երբ. – ներման օր), հրեական կարևորագույն կրոն. տոներից. նշվում է տիշրեյ (սեպտ–հոկտ.) ամսվա 10–րդ օրը: Կարծում են, որ այդ օրն Աստված մաքրագործում է ժողղ–ին և որոշում յուրաքանչյուր մարդու ճակատագիրն առաջիկա տարում: Յ. կ. խիստ պահքի, աշխ–ից և վայելքներից հրաժարվելու օր է:

«ՅՈՅՅՈ», ազգ., կրոն., բարոյախոս., իմաստասիր., բանասիր. ամսագիր (1864–77, Արմաշ): Արմաշի Սբ Աստվածածին վանքի միաբանության հրտ–յուն: Խմբ.՝ Խորեն Աշըգյան:

«ՅՈՅՅՈ», մշակութ., հաս. երկշաբաթաթերթ (2007–ից, Թեհրան՝ հայ., պարսկ.): Արտոնատեր՝ Լևոն Ահարոնյան, խմբ–ներ՝ Ռոբերտ Սաֆարյան, Խաչիկ Խաչեր:

ՅՈՆ ՊՈՏԿՈՎԵՑԻ (Ioan Potcovă), **Նիկոլայ Պոտկովը, Կարապետ Սերպեգա** (ծ. թ. անհտ–1578), Մոլդովայի հոսպոդար՝ 1577–ից: Լեհահայ Սերպեգա գերդաստանից, մոր կողմից՝ *Յոն Քաջի* եղբայրը: Ընտրվելով հետման (1577)՝ 3 հզ. կազակներով Յասսիի (Յաշ) մոտ ջախջախել է Մոլդովայի իշխան Պետրու Կաղի թուրք. զորքը և տիրել գահին: Վերջինս թուրքերի աջակցությամբ վերանվաճել է (1578) այն: Մուրադ III սուլթանի ճնշմամբ Լեհաստանի թագավոր Ս. Բատորին ձերբակալել և մահապատժի է ենթարկել Յ. Պ–ին:

ՅՈՆ ՔԱՋ (Ioan Viteaz), **Յոան Հայ, «Մոլդովայի հայր»** (մոտ 1521–1574), զորավար, քաղ. գործիչ, Մոլդովայի հոսպոդար՝ 1572–ից: Փորձել է ստեղծել եվրոպ. տերությունների դաշնություն՝ ընդդեմ օսմ. Թուրքիայի: 1574–ի ապրիլին ջախջախել է Մոլդովա ներխուժած Վալախիայի և Տրանսիլվանիայի իշխանների միացյալ ուժերը, մտել Վալախիա, գրավել Բուխարեստը, ապա Բենդերիի և Աքքերմանի մոտ պարտության մատնել օգնության եկած թուրք. զորքերին: Սակայն Սելիմ II–ը նրա դեմ է հանել 200–հզ–անոց բանակ, և Յ. Ք. ստիպված նահանջել է Ռոշկան: Հավատալով թշնամու կեղծ երդմանը՝ներկայացել է թուրք. զորաբանակի հրամ–ի վրան և դաշունահարվել:

ՅՈՆԱՍ (Jonas) Ֆրանց (1899–1974), Ավստրիայի դաշն. նախագահ՝ 1965–ից: Ավստրիայի սոց. կուս-յան հիմնադիրներից (1945), 1950–65-ին՝ կուս-յան նախագահի տեղակալ: 1951–65-ին՝ Վիեննայի բուրգոմիստր:

ՅՈՆԱՏ (Yonath) Ադա (օրիորդ. ազգանունը՝ Լիֆշից, ծ. 1939), իսրայելացի բյուրեղագետ: Առաջիններից է կիրառել ցածրջերմաստիճան. սպիտակուց. բյուրեղագիտ-յունը ռիբոսոմների կառուցվածքի ուսումնասիրության համար: Բացահայտել է հակաբիոտիկների ազդեցությունը ռիբոսոմների վրա և օրգանիզմի դիմադրողականության մեխանիզմը:

Նոբելյան մրց. (2009, Վ. *Ռամակրիշնանի* և Թ. *Ստեյցի* հետ):

ՅՈՆԳԿԻՆԴ (Jongkind) Յան Բարթոլդ (1819–1891), հոլանդացի գեղանկարիչ: Ռեալիստ. բնանկարներին («Ջրանցքի առափնյակը», 1867, ևն) բնորոշ է լույսի և մթն-ի շերտերի իրական զգացողությունը:

ՅՈՇԿԱՐ ՕԼԱ, ՌԴ Մարիի Հանրապետության մայրաքաղաքը՝ Մալայա Կոկշա գետի ափին: Բն.՝ 263,1 հզ. (2015): Ունի 3 բուհ, 4 թատրոն, թանգարան ևն:

ՅՈՇՎԱ ՍՏԻԼԻՏ, *Յոնակյաց*, V–VI դդ-ի ասորի մատենագիր: Նրան վերագրվող «Ժամանակագրությունն» ընդգրկում է V դ-ի վերջ–503-ի իրադարձությունները, որտեղ արժեքավոր տեղեկություններ կան նաև Հայաստանի և պարսիկների դեմ հայերի ապստամբությունների մասին:

ՅՈՈՍ ՎԱՆ ԳԵՆՏ (Joos van Gent, 1435/40–1480-ից հետո), նիդեռլանդացի գեղանկարիչ: 1469-ից՝ Հռոմում, 1473-ից՝ դուքս Ֆեդերիկո դա Մոնտեֆելտրոյի արքունիքում: Միակ նիդեռլանդացի նկարիչն է, որն իտալ. արվ-ում նպաստել է յուղանկարչության տեխնիկայի տարածմանը («Առաքյալների հաղորդությունը», 1473–74, «Վհուկների երկրպագությունը», «Գողգոթա», եռապատկեր և դիմանկարների շարք):

ՅՈՍԵՖՈՎԻՉ, *Յուզեֆովիչ*, Հովհան-Թովմաս (1662–1728), լեհահայ պատմագիր: Գրել է «Դիտողություններ Լվովի արքեպիսկոպոսների կենսագրությունների մասին» պատմ. երկը (լատ.), որը փաստորեն Արմ. Ուկրաինայի 1614–1703-ի ժամանակագրությունն է: Յ. հեղինակ է նաև մի օրագրության, որտեղ նկարագրել է շվեդ. բանակի՝ 1704-ին Լվովի գրավումը:

ՅՈՎԱՆՈՎԻՉ (Jobanobiћ) Սլոբոդան (1869–1958), սերբ իրավաբան, պետ. և քաղ. գործիչ, պատմաբան: 1941-ին՝ Հարավսլավիայի փոխվարչապետ, 1942–43-ին՝ Լոնդոնում հարավսլավ. վտարանդի կառ-յան վարչապետ: 1946-ից՝ վտարանդի ազգ. կոմիտեի նախագահ: Աշխ-ները վերաբերում են Սերբիայի XIX դ.–XX դ-ի սկզբի պատմությանը:

ՅՈՐԳԱ, (Iorga) Նիկոլայե (1871–1940), ռումին քաղ. գործիչ, պատմաբան, գրող, հայագետ: Ռումինիայի ակադ-ի ակադ. (1910): 1918–20-ին՝ Ռումինիայի Աժ նախագահ, 1931–32-ին՝ վարչապետ և կրթության նախարար, 1939-ին՝ Ռումինիայի Սենատի նախագահ: Աշխ-ները վերաբերում են Ռումինիայի, Հայաստանի, Թուրքիայի, Բյուզանդիայի և այլ երկրների, ինչպես նաև ռում. գրկ-յան պատմությանը:

ՅՈՐԳԵՆՍԵՆ (Jørgensen) Անկեր (1922–2016), Դանիայի վարչապետ՝ 1972–73 և 1975–82-ին:1972–87-ին՝ Դանիայի ս-դ. կուս-յան նախագահ:

ՅՈՐԴԱՆ (Jordan) Յորգու (1888–1986), ռումին լեզվաբան: Ռումինիայի ակադ-ի ակադ. (1945): Հեղինակ է համեմատ. ռոմանագիտ-յանը, ռում-ին, տեղանունությանը, ֆրանս. և իտալ. գրկ-ների պատմությանը վերաբերող աշխ-ների:

ՅՈՐԴԱԵՆՍ (Jordaens) Յակոբ (1593–1678), ֆլամանդացի գեղանկարիչ: Ժանր., կրոն., դից. թեմաներով կոմպոզիցիաներում պատկերել է ամուր, ծանրամարմին ֆիգուրներ՝ հյութեղ մանրամասներով, հնչեղ տաք գույներանգով («Ընտանեկան դիմանկար», մոտ 1622–24, «Պտղաբերության այլաբանություն», մոտ 1625–28): Յ-ի «Պանը և Սիրինիքսը» գունանկարը և «Տղամարդու դիմանկար» գրաֆիկ. գործը ՀԱՊ-ում են:

ՅՈՐՈՒԲԱ, աֆրիկ. նեգր. լեզու, յորուբա ժողղ-ի լեզուն: Նիգերիայի նինգ-ի պաշտոն. լեզուներից: Պատկանում է բենուե-կոնգոլեզյան լեզվաընտանիքի սուդան. լեզվախմբին: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՅՈՐՔ (York) Մայքլ (ծ. 1942), անգլիացի դերասան: 1967-ից նկարահանվում է կինոյում («Ռոմեո և Ջուլիետ», «Կաբարե», «Սպանություն Արևելյան ճեպընթացում», «Ֆեդորա», «Բոլոր հարազատների անունից», «Լոգանի փախուստը, «Gospa» ևն):

ՅՈՐՔ, 1. ք. ԱՄՆ Փենսիլվանիա նահանգ-ում: Բն.՝ 510 հզ. (արվարձաններով, 2005): 2. Ք.՝ Անգլիայում: Բն.՝ 252 հզ. (2015): 735-ից՝ Յորքի արք-ի նստավայրն է: Ունի համալսարան: Գործում է Յորքշիրի թանգարանը, ճարտ. հուշարձաններից են թանգարան-ամրոցը, ռոմանա-գոթ. տաճարը (XI–XV դդ.), Սենտ Մերի աբբայությունը (XIII դ.) ևն:

ՅՈՐՔԵՐ (Yorks), թագավոր. հարստություն Անգլիայում՝ 1461–85-ին, Պլանտագենետների ճյուղ: Առավել հայտնի ներկայացուցիչներն են Էդուարդ IV-ը, Էդուարդ V-ը, Ռիչարդ III-ը:

ՅՈՒԱՆ, կայսեր. հարստություն Մոնղոլիայում (1271–1368) և Չինաստանում (1279-ից): Հիմնադրել է մոնղոլ Խուբիլայ խանը, որը 1279-ին ավարտել է Չինաստանի նվաճումը: Տապալվել է 1351–68-ի «Կարմիր զորքերի» ապստամբության հետևանքով:

ՅՈՒԱՆ, ՉԺՀ ազգ. դրամ. միավորը, հավասար է 10 ցզաոյի կամ 100 ֆինյայի:

ՅՈՒԱՆ ՇԻ-ՔԱՅ (1859–1916), Չինաստանի նախագահ՝ 1912-ից (Ցին հարստության անկումից հետո): Հաստատել է ռազմ. դիկտատուրա: Բեյանցի ռազմամոլների առաջնորդը:

ՅՈՒԳ, գետ ՌԴ եվրոպ. մասի հս-ում: Սուխոնա գետի հետ կազմում է (աջ կողմից) Հս. Դվինան: Երկ.՝ 574 *կմ*, ավազանը՝ 35,6 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 306 *մ*^{3}/*վ*: Լուղարկելի է, նավարկելի է Նիկոլսկ ք-ից:

ՅՈՒԳՈՐՅԱՆ ՇԱՐ, նեղուց Վայգաչ կղզու և Եվրասիա մայրցամաքի միջև: Միացնում է Բարենցի և Կարայի ծովերը: Երկ.՝ 40 *կմ*, լայն.՝ 3–16 *կմ*, խոր.՝ 13–40 *մ*:

ՅՈՒԳՈՒՐԹԱ, (Jugurtha, մ. թ. ա. 160–104), Նումիդիայի (Հս. Աֆրիկա) թագավոր՝ 117-ից: Պարտվել է 111–105-ի հռոմեացիների դեմ պատերազմում. գերեվարել է Գ. Մարիոսը: Մահապատժի է ենթարկվել:

ՅՈՒԴԱԽԻՆ Կոնստանտին Կուզմիչ (1890–1975), ռուս. լեզվաբան: Ուզբ. ԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1952): Ղրղզ. ԽՍՀ ԳԱ ակադ. (1954): Հեղինակ է թյուրք. լեզուների բառագիտ-յանը, բարբառագիտ-յանը, ինչյունաբանությանը վերաբերող աշխների: ԽՍՀՄ մի շարք ժողղ-ների համար ստեղծել է ազգ. այբուբեններ: Կազմել է ղրղզ-ռուս. (1940), ուզբեկ-ույղուր. բառարաններ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1967):

ՅՈՒԴԱՇԿԻՆ Վալենտին Աբրամովիչ (ծ. 1963), ռուս. մոդելավորող, նկարիչ: ՌԴ արվ. վաստ. գործիչ (1999), ժող. նկարիչ (2005): ՌԴ Գեղարվ-ի ակադ-ի թղթ. անդամ (2007): Մոսկվայում հիմնադրել է իր ֆիրման (1991), Նորաձևության տունը (1993): Ստեղծել է «բարձր նորաձևության» հավաքածուներ («Ֆաբերժե», «Դարի վերջը», «Բյուզանդիա» ևն), նաև հագուստի տեսակներ՝ զանգված. արտադրության (1994-ից), օլիմպ. խաղերի մասնակիցների, ռուս. էստրադայի արտիստների և ուր. համար: ՌԴ Կառ-յան մրց. (2003):

ՅՈՒԴԵՆԻՉ Նիկոլայ Նիկոլաևիչ (1862–1933), հետևակի ռուս. գեն. (1915), Սպիտակ շարժման ղեկ-ներից Ռուսաստանի հս-արմ-ում: ԱՀՊ-ի ժամանակ՝ Կովկաս. բանակի հրամ. (1915–16): Հաջողությամբ իրականացրել է Էրզրումի և Տրապիզոնի ռազմ. գործողությունները: 1917-ի մարտ–ապրիլին՝ Կովկաս. ռազմաճակատի հրամ.: Ռուսաստանում քաղաքաց. պատերազմի (1917–22) տարիներին գլխավորել է սպիտակգվարդիականների՝ Հս-արմ. բանակի արշավանքը Պետրոգրադ: 1920-ից տարագրվել է Մեծ Բրիտանիա:

ՅՈՒԴԻՆ Սերգեյ Սերգեևիչ (1891–1954), ռուս վիրաբույժ: ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1944): Առաջինն է (1930) կատարել դիակային արյան փոխներարկումը մարդուն: Աշխ-ները վերաբերում են ստամոքսի և կերակրափողի վիրաբուժությանը, անհետաձգելի ու ռազմադաշտ. վիրաբուժությանը և անեսթեզիոլոգիային:

ԽՍՀՄ Պետ. (1942, 1948), Լենինյան (1962, հետմահու) մրց-ներ:

ՅՈՒԵ ՖԵՅ (1103–1142), չին զորավար: 1122-ից պայքարել է կիդանների, 1126-ից՝ չժուրչժենների դեմ: Պետ. դավաճանության կեղծ մեղադրանքով մահապատժի է ենթարկվել:

ՅՈՒՀ (Hughes) Դեվիդ Էդուարդ (1831–1900), հեռագր. և հեռախոս. կապի բնագավառի անգլիացի գյուտարար: Ստեղծել է տառատիպ հեռագր. սարք (1855, ԱՄՆ), ածխային միկրոֆոն ևն:

ՅՈՒԶԲԱՇՅԱՆ Բենիկ Տիգրանի (1919–1975), գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1973): Հեղինակ է «19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի ֆրանսիական գրականությունը և Անատոլ Ֆրանսը» (1964), «Գորկին և գրականագիտության մի քանի հարցեր» (1968), «Անատոլ Ֆրանս» (1976) աշխ-ների:

ՅՈՒԶԲԱՇՅԱՆ Էռնա Նիկոլայի (ծ. 1958), էստրադ. և ջազ. երգչուհի: ՀՀ վաստ. արտիստ (2015): 1979-ին՝ «Գայա» պետ. ջազ. քառյակի, 1980-ին՝ «Մերպանտին» վոկալ-գործիք. անսամբլի, 1982-ից՝ Հայաստանի պետ. էստրադ. և Ռադիոյի էստրադ-սիմֆ. նվագախմբերի մենակատարուհի: 1994-ից՝ ԱՄՆ-ում: Երգացանկում՝ հայ կոմպոզիտորների երգեր, ժող. և գուսան. երգերի էստրադ. մշակումներ:

Երիտասարդ կատարողների համամիութ. մրցույթի 1-ին (1981, Դնեպրոպետրովսկ), «Կարմիր մեխակ» միջազգ. մրցույթի 2-րդ (1983, Սոչի), Բելգրադի «Մեսամ» միջազգ. մրցույթի 3-րդ (1987), ՀամԼԿԵՄ (1989) մրց-ներ:

ՅՈՒԶԲԱՇՅԱՆ Կարեն Մկրտչի (1927–2009), պատմաբան։ Պատմ. գիտ. դ–ր (1974)։ Մկրտիչ *Յուզբաշյանի* որդին։ Աշխ–ները վերաբերում են միջնադար. Հայաստանի պատմությանը, Բյուզանդիայի ու Հայաստանի պատմամշակութ. առնչություններին և այլ հարցերի։

Ռուսաստանի Պաղեստինյան ընկ–յան Ս. Պետերբուրգի բաժանմունքի նախագահ (1980–ից), Լենինգրադի Հայ մշակույթի բարեկամների ընկ–յան նախագահ (1988–90)։

ՅՈՒԶԲԱՇՅԱՆ Մարիուս Արամի (1924–1993), ԽՍՀՄ պետանվտանգության գեն–լեյտ. (1985)։ ՀՄՊ–ի ժամանակ եղել է պարտիզան. ջոկատների փոխհրամ.։ 1956–65–ին՝ ԳԴեմՀ–ում ՊԱԿ–ի ներկայացուցչության 3–րդ բաժնի պետի տեղակալ, 1965–71–ին՝ պետ, 1972–78–ին՝ ԽՍՀՄ ՊԱԿ–ի 1–ին գլխ. վարչության գաղտնի հետախուզության վարչության պետի տեղակալ, 1978–88–ին՝ ՀԽՍՀ ՊԱԿ–ի նախագահ։ Սպանվել է չբացահայտված հանգամանքներում։

ՅՈՒԶԲԱՇՅԱՆ Մկրտիչ (Նիկիտա) Մովսեսի (1882–1961), ճարտարագետ–էլեկտրիկ։ Սիմոն *Յուզբաշյանի* եղբայրը, Կարեն *Յուզբաշյանի* հայրը։ 1923–24–ին՝ Թիֆլիսի էլեկտրամեխ. գործարանի տնօրեն, 1924–30–ին՝ գլխ. ճարտարագետ։ 1930–ից ղեկավարել է Երևանի տրամվայի գծի շին–յունը։ Էլեկտրամեխանիկայի հայ. առաջին դասագրքի հեղինակ։

ՀԽՍՀ Աշխ. կարմիր դրոշի շքանշան (1933)։

ՅՈՒԶԲԱՇՅԱՆ Յուրի Վաղարշակի (ծ. 1935), խմբավար, մանկավարժ։ Մանկավարժ. գիտ. դ–ր (1996), պրոֆ. (1991)։ ՀՀ վաստ. մանկավարժ (2003)։ Նյու Յորքի միջազգ. ակադ–ի պատվ. անդամ (1998)։

Ամերիկ. կենսագր. ինստ–ի «Տարվա մարդ» (1994, 2010), ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2015)։

ՅՈՒԶԲԱՇՅԱՆ Սիլվա Համբարձումի (ծ. 1954), դերասանուհի, ասմունքող։ ՀՀ վաստ. արտիստ (2008)։ 1976–ից՝ Հայֆիլհարմոնիայի ասմունքող (երկացանկում՝ Գրիգոր Նարեկացու, Ա. Իսահակյանի, Հ. Շիրազի, Վ. Դավթյանի, Հ. Սահյանի և ուր. երկերից)։

ՀԼԿԵՄ (1986), «Ձին» ոսկե (1992, Կալիֆոռնիա) մրց–ներ, ՀՀ ՄՆ ոսկե (2007), ՄՆ «Վիլյամ Սարոյան» (2011), ԱԺ ոսկե (2012) մեդալներ, ՄՆ «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալ (2016)։

ՅՈՒԶԲԱՇՅԱՆ Սիմոն Մովսեսի (1886–1960), կենդանաբան։ Պրոֆ. (1929)։ Մկրտիչ *Յուզբաշյանի* եղբայրը։ ԽՍՀՄ ԳԱ ԱրմՖԱՆ–ի կենսբ–յան ինստ–ի հիմնադիր–տնօրեն (1935–39)։ Առաջարկել է կենդանիների օրգանների ապաճման առանձին տեսակների դասակարգում։

ՅՈՒԺԻՆ (Սումբատով) Ալեքսանդր Իվանովիչ (1857–1927), ռուս. դերասան, ռեժ., դրամատուրգ, թատեր. գործիչ (ծագումով՝ վրացի)։ ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1922)։ ՌԴԱ պատվ. անդամ (1917)։ 1882–ից՝ Մոսկվայի Փոքր թատրոնի դերասան (1909–ից՝ թատերախմբի ղեկ., տնօրեն)։ Ստեղծել է հերոս. ռոմանտիկ կերպարներ Ֆ. Շիլլերի, Վ. Հյուգոյի պիեսներում, խաղացել ողբերգություններում (Մակբեթ՝ Վ. Շեքսպիրի «Մակբեթ», ևն)։ կատակերգություններում (Ֆամուսով՝ Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս», ևն)։ Ց–ի «Բազեներ և ագռավներ» (1885, Վ. Ի. Նեմիրովիչ–Դանչենկոյի հետ), «Շղթաներ» (1888), «Դավաճանություն» (1903) պիեսները բեմադրվել են հայկ. թատրոնում։

ՅՈՒԼԵՆՍՏԵՆ (Gyllensten) Լարս (1921–2006), շվեդ գրող։ Շվեդիայի ակադ–ի անդամ (1966)։ Հեղինակ է «Սոկրատեսի մահը» (1960), «Կայենի հուշերը» (1963), «Դոն Ժուանի ստվերում» (1975), «Ստվերի վերադարձը» (1985) և այլ վեպերի, «Նիհիլիզմի համոզմունքը» (1964) էսսեի, «Հիշողություններ, ուղղակի հիշողություններ» (2000) հուշագրության, չափածո պարոդիաների, նովելների։

ՅՈՒԼԻԱՆԱ (Juliana, 1909–2004), Նիդեռլանդների թագուհի՝ 1948–80–ին։

ՅՈՒԼԻՈՒՍ (Julius) Ասֆալգ (1919–2001), գերմանացի արևելագետ, հայագետ։ Բանասիր գիտ. դ–ր (1952)։ Վրաստանի ԳԱ արտ. անդամ։ 1961–ից՝ «Օրիենս Քրիստիանուս» («Oriens Christianus») պատմաբանասիր. հանդեսի հրտ.։ Հեղինակ է «Հայկական ձեռագրեր» (1962, Յ. Մոլիտորի հետ), հայ–ի բառապաշարին («Քրիստոնյա Արևելքի փոքրիկ բառարան», 1975, Պ. Քրյուգերի հետ), նաև քերակ–յանը վերաբերող աշխ–ների։ Ուսումնասիրել է հայկ. արձանագրություններ, ձեռագրեր։ Կազմել է Գերմանիայում պահպանվող հայկ. (1962), ասոր. (1963), վրաց. (1963) միջնադար. գրչագրերի ձեռագրացուցակներ։

ՅՈՒԽԱՆՅԱՆ Սարգիս Արիստակեսի (1931–2010), քանդ.։ Հեղինակ է «Հաղթանակ» (1989, Գյումրիի երկթղ. կայարան), «Մայր Հայաստան» (1992, Այրում) հարթաքանդակների, ԵՕԲԹ–ի գոտիների (1990), ՀԳՄ Ծաղկաձորի ստեղծագործ. տան որմնանկարների (1994) ևն։

Քանդակի միջազգ. ցուցահանդեսի 1–ին մրց. (1975, Մոսկվա)։

ՅՈՒԿՈՎԱ Հիդեկի (1907–1981), ճապոնացի ֆիզիկոս։ Լոնդոնի թագավոր. ընկ–յան (1963), ԽՍՀՄ ԳԱ արտ. (1966) անդամ։ Կանխատեսել է *մեզոնների* գոյությունը (1935), Էլեկտրոն. զավթման երևույթը, մշակել միջուկ. ուժերի տեսությունը (1936, Ս. *Սակարայի* հետ)։ Առաջարկել է միջանկյալ *բոզոնի* գաղափարը։

Նոբելյան մրց. (1949), ԽՍՀՄ ԳԱ Մ. Վ. Լոմոնոսովի անվ. մեդալ (1964)։

ՅՈՒԿԱՏԱՆ (Yucatán), 1. նահգ Մեքսիկայում՝ համանուն թ–կղզու հս–ում։ Տարածքը՝ 39,3 հզ. *կմ*², բն.՝ 1,2 մլն (2010)։ Կենտրոնը՝ *Մերիդա*։ 2. Թ–կղզի Կենտր. Ամերիկայում՝ Մեքսիկ. ծոցի և Կարիբյան ծովի միջև։ Հիմն. մասը Մեքսիկայում է, հվ–արլ. մասը՝ Գվատեմալայում և Բելիզում։ Տարածքը՝ 180 հզ. *կմ*²։ Հվ–արլ–ում Մայա լ–ներն են (բարձր.՝ մինչև 1122 *մ*)։

ՅՈՒԿԱՏԱՆԻ ՆԵՂՈՒՅ, Յուկատան թ–կղզու և Կուբա կղզու միջև։ Լայն.՝ 200 *կմ*, առյուն խոր. (նավարկելի հատվածում)՝ 1269 *մ*։ Կարիբյան ծովից նեղուցով շարունակաբար մղվող ջրի հետևանքով տեղի է ունենում ջրի մակարդակի հզոր բարձրացում Մեքսիկ. ծոցում, որը նպաստում է *Գոլֆստրիմի* առաջացմանը։

ՅՈՒԿՈՆ (Yukon), սարավանդ Հս. Ամերիկայում՝ ԱՄՆ–ում (Ալյասկայի նահգ) և Կանադայում։ Լեռների բարձր.՝ 1500–2000 *մ*։ Արդյունահանում են ոսկի և քարածուխ։

ՅՈՒԿՈՆ, գետ Կանադայում և ԱՄՆ–ում (Ալյասկայի նահգ)։ Երկ.՝ 3700 *կմ*, ավազանը՝ 855 հզ. *կմ*², ջրի միջին ծախսը՝ 6,5 հզ. *մ*³/*վ*։ Նավարկելի է 3200 *կմ*։

ՅՈՒՀԱՍ (Juhász) Ֆերենց (1928–2015), հունգար բանաստեղծ։ Հեղինակ է «Շանտայի ընտանիքը», «Իմ հայրը» (երկուսն էլ՝ 1950) պոեմների, «Թևավոր մտրուկ» (1949), «Նոր բանաստեղծություններ» (1951), «Ծաղիկների իշխանությունը» (1955) ժող–ների, «Վատնող երկիրը» (1954), «Գիշերային տեսիլքներ» (1962), «Հավատ առ պոեզիան» (1977), «Հրեշտակապետը և քամին։ Նոր բանաստեղծություններ» (2003) և այլ պոեմների։

Հունգարիայի Կոշուտի անվ. (1951, 1973), «Ոսկե պսակ» (1992), «Prima Primissima» (2007) և այլ մրց–ներ։

ՅՈՒՂԱՆԵՐԿԵՐ, ներկեր՝ *օլիֆի* (ներկաձեթ) հիմքի վրա։ Անօրգ. գունանյութերի և լցոնների կախույթներն օլիֆներում։ Արտադրվում են հեղուկ և մածուկային Յ.։ Առաջացնում են բավարար մթնոլորտակայուն, ոչ բարձր ամրությամբ, ջրում դանդաղ ուռչող և հիմքերում քայքայվող պատվածքներ։ Կիրառվում են շին–յան (պատերը, տանիքները, փայտը ևն ներկելու համար), ինչպես նաև գեղանկարչության մեջ։

ՅՈՒՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ, գեղանկարչության տեսակ, որի գործերն ստեղծվում են հիմնաներկով ծածկված կտավի, փայտի, ստվարաթղթի, քարի ևնի (հաստոց. գեղանկարչություն) կամ ծեփված պատի (մոնումենտալ գեղանկարչություն) վրա։ Յ–յան տեխնիկան մշակել է նիդեռլանդացի նկարիչ Յ. *Վան Էյքը* (XV դ.)։

ՅՈՒՂԱՄՆԿԵՐ (Suilus), բազիդիավոր սնկերի դասի բոլետայինների ընտանիքի գլխարկավոր սնկերի ցեղ։ Հայտնի է մոտ 50 տեսակ, ՀՀ–ում՝ 8 (սովոր. կամ դեղին Յ., իծասունկ ևն)՝ ՀՀ բոլոր մարզերի անտառաշատ վայրերում։ Միկոռիզազոյացնող են, համակեցության մեջ են մոնում սոճու հետ։ Առավել տարածված է Յ. հատիկավորը։ Գլխարկը մսալի է՝ դեղնավուն կամ շեկաշագանակագույն, հետագայում՝ գորշադեղին, մերկ, կպչուն, չորանալուց հետո՝ փայլուն։ Պտղամիսը դեղին է՝ հաճելի համով և հոտով։

ՅՈՒՂՈՐԴ, յոգուրդ, կաթնաթթվային սննդամթերք։ Բաղկացած է հիմնականում յուղազրկված կաթից և բուլղ. ցուպիկի ու ջերմասեր ստրեպտակոկերի կուլտուրայի մերանից։ ԱՄՆ–ում Յ–ի արտադր–յան 1–ին արտոնագիրը տրվել է Սարգիս և Ռոզա Կոլոմբոսյաններին (1929)։

«ՅՈՒՄԱՆԻՏե» («l'Humanite» – «Մարդկություն»), հաս–քաղ. օրաթերթ (1904–ից, Փարիզ՝ ֆրանս.)։ Ֆրանսիայի կոմկուսի պաշտոնաթերթ (1923–ից)։ Հիմնադիր՝ Ժ. *Ժորես*։

ՅՈՒՄԱՇԵՎ Անդրեյ Բորիսովիչ (1902–1988), ռուս. փորձարկող օդաչու։ Ավիացիայի գեն–մայոր (1943)։ ԽՄ հերոս (1937)։ Հս. բևեռի վրայով ԱՄՆ թռիչք կատարած Մ. Մ. *Գրոմովի* ինքնաթիռի անձնակազմի անդամ (1937)։

ՅՈՒՄԱՇԵՎ Իվան Ստեպանովիչ (1895–1972), ռուս. ծովակալ (1943)։ ԽՄ հերոս (1945)։ 1939–47–ին՝ Խաղաղօվկիանոս. նավատորմի հրամ., 1947–51–ին՝ ՌՕՈՒ գլխ. հրամ. և ռազմածով. նախարար։ 1951–57–ին՝ Ռազմածով. ակադ–ի պետ։

ՅՈՒՅՅԻ, ք. Չինաստանի Շանսի նահգում։ Բն.՝ 250 հզ. (2005)։ Տրանսպորտ. հանգույց է։

ՅՈՒՆ ԻՄԱՆ (1917–1995), կորեացի կոմպոզիտոր։ Բեռլինի և Համբուրգի գեղարվ–ի ակադ–ների անդամ։ 1967–ին դատապարտվել է ցմահ ազատազրկման (լրտեսութ–

յան մեղադրանքով): 1969-ին ազատ է արձակվել՝ արմ. հաս-յան բողոքի շնորհիվ: Կորեական դաս. երաժշտության տարրերը համադրել է արդի կոմպոզիցիոն տեխնիկային: Հեղինակ է 4 օպերայի, սիմֆ., կամեր-գործիք. և այլ երկերի:

ՅՈՒՆ ՍՈՆ ԴՈ (Կոսան, Հեռն, 1587–1671), կորեացի բանաստեղծ, պետ. գործիչ: Հեղինակ է «Նոր երգեր լեռներում» (1642, այդ թվում՝ «Երգեր հինգ ընկերոջ մասին», շարք), «Զկնորսի՝ տարվա չորս եղանակը» (1651) բնանկար. քնարերգության:

«ՅՈՒՆԱՅԹԵԴ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» (United Technologies Corporation), ԱՄՆ-ի ֆինանսարդ-յան խոշորագույն խմբերից: Հիմնադրվել է 1929-ին՝ մի շարք ընկ-ների միավորմամբ, որը 1934-ին բաժանվել է 3 մասի: Դրանցից «Յունայթեդ Էյրքրաֆթը» 1975-ին վերանվանվել է «Յ. Թ.»: Արտադրում է օդափոխության, սառեցման համակարգեր, ավիացիոն և ռազմ. (պաշտպ.) համալիրներ, ավիաշարժիչներ, տուրբիններ, ուղղաթիռներ ևն:

«ՅՈՒՆԱՅԹԵԴ ՍԹԵՅԹՍ ՆԵՅՍ ԷՆԴ ՈՒՈՐԼԴ ՐԻՓՈՐԹ» («United States News and World Report» – «Միացյալ Նահանգների և միջազգային լուրեր»), հաս-քաղ., տնտ. օրաթերթ (1933-ից, Վաշինգտոն՝ անգլ.):

«ՅՈՒՆԱՅԹԵԴ ՓՐԵՍՍ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» («United Press International»), ԱՄՆ-ի խոշորագույն տեղեկատվ. գործակալություններից: Հիմնադրվել է 1907-ին Վաշինգտոնում՝ «Յունայթեդ Փրեսս Ասոշիեյշն» անվանումով, 1958-ին միավորվել է «Ինթերնեյշնլ Նյուս Սերվիս» գործակալության հետ և կոչվել «Յ. Փ. Ի.»: 2000-ից՝ «Նյուս Ուորլդ Հոմյունիքեյշընս» մուլտիմեդիա միավորման կազմում:

ՅՈՒՆԳ, Յանգ (Young), Էդուարդ (1683–1765), անգլիացի բանաստեղծ: «Մտքեր յուրօրինակ ստեղծագործության մասին» (1759) տրակտատում հանդես է եկել ռացիոնալիստ. գեղագիտ-յան դեմ: Հեղինակ է «Գանգատ կամ Գիշերային մտորումներ կյանքի, մահվան և անմահության մասին» (գիրք 1–9, 1742–45) պոեմի:

ՅՈՒՆԳ, Յանգ, Թոմաս (1773–1829), անգլիացի բնագետ, բժիշկ: Լույսի ալիք. տեսության հիմնադիրներից: Զևակերպել է ինտերֆերենցիայի սկզբունքը (1801), արտահայտել լուս. ալիքների լայնական լինելու գաղափարը (1817): Բացատրել է աչքի հարմարումը (ակոմոդացիա), մշակել գունավոր տեսողության տեսությունը, չափել տարբեր գույների ալիքների երկյունները: Ներմուծել է առաձգականության բնութագրիչը (Յունգի մոդուլ):

ՅՈՒՆԳ (Yung) Կառլ Գուստավ (1875–1961), շվեյցարացի հոգեբան և փիլ., «վերլուծական հոգեբանության» հիմնադիրը: Զարգացրել է կոլեկտիվ անգիտակցականի մասին ուսմունք, որի պատկերներում (այսպես կոչված արքետիպեր) տեսել է համամարդկային խորհրդանիշների աղբյուրը, այդ թվում՝ նաև առասպելների և երազների («Լիբիդոյի կերպափոխություններն ու խորհրդանիշները», 1912): Մեծ ազդեցություն է թողել մշակութաբանության, համեմատ. կրոնագիտ-յան և առասպելաբանության վրա:

ՅՈՒՆԳ, Յանգ, Չառլզ Օգաստես (1834–1908), ամերիկացի աստղագետ: Աշխ-ները վերաբերում են Արեգակի ֆիզիկային՝ գունոլորտի, հրվիժակների, բծերի սպեկտր. հետազոտություններին:

ՅՈՒՆԳԱՆ, լ. Չինաստանի Դաթուն ք-ի հս-արմ-ում: Լանջին անձավ. բուդդ. տաճար է (ներկայում՝ թանգարան, 460–545): Կա ավելի քան 60 քարանձավ, որոնք զարդարված են քանդակներով (Բուդդայի՝ մինչև 15 *մ* բարձր-յան արձաններ), բազմագույն որմնանկարներով ևն:

ՅՈՒՆԳԵՐ (Jünger) Ելենա Վլադիմիրովնա (1910–1999), ռուս. դերասանուհի: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1950): Ն. Պ. *Ակիմովի* կինը: Դերերից են՝ Արքայադուստր (Ե. Լ. Շվարցի «Ստվեր»), Դիանա (Լոպե դե Վեգայի «Պարտիզպանի շունը»), Վիոլա (Վ. Շեքսպիրի «Տասներկուերորդ գիշեր»), Գուրմիժսկայա (Ա. Ն. Օստրովսկու «Անտառ»), Պատրիկ Քեմփբել (Ջ. Կիլտիի «Սիրելի ստախոսը») ևն: Նկարահանվել է կինոյում:

ՅՈՒՆԳԵՐ Էռնստ (1895–1998), գերմանացի գրող և փիլ.: Հեղինակ է 1914–18-ի պատերազմ. թեմաներով «Պողպատե ամպրոպներում» (1920) օրագրության, «Հելիոպոլիս» (1949), «Ապակե փեթակ» (1957) վեպերի, «Ժամանակի պատի մոտ» (1959) փիլ. էսսեների ժող-ի, որտեղ իռացիոնալիստ. և նիհիլիստ. դիրքերից քննադատել է ժամանակակից քաղաքակրթությունը, նաև «Օրագրեր (1965–1980)» (հ. 1–2, 1980–81) ժող-ի և այլ գործերի:

ՅՈՒՆԳՀՈՒՆ (Jungchuhn) Ֆրանց Վիլհելմ (1809–1864), գերմանացի բնախույզ և ճանապարհորդ: 1835–49-ին հետազոտել է Ճավա և Սումատրա կղզիները: Աշխ-ները վերաբերում են Մալայան կղզեխմբի հնէագիտ-յան, բուսաբ-յան, երկրբ-յան հարցերին:

ՅՈՒՆԳՄԱՆ (Jungmann) Յոզեֆ (1773–1847), չեխ բանաստեղծ, բանասեր, թարգմանիչ: Յ-ի չեխ. գրկ-յան քրեստոմատիան (1820), «Չեխական գրականության պատմություն» (1825) աշխ-ները, «Չեխ-գերմաներեն բառարան»-ը (հ. 1–5, 1835–39) մեծապես նպաստել են չեխ. մշակույթի կայացմանը ազգ. վերածննդի ժամանակաշրջանում:

ՅՈՒՆԳՄԱՆ (Yungmann) Պաուլ (1929–1975), գերմանացի հայագետ, լեզվաբան, թարգմանիչ: Հայոց լեզու է դասավանդել Բոննի (1963-ից) և Բոխումի (1967-ից) համալսարաններում: Հեղինակ է «Որոշ յալ հոդի գործածությունը գոյականի հետ դասական հայերենում» (1964) աշխ-յան: Յ-ի ծրագրած հայ-ի ընդարձակ հանգաբառարանի (4 հ.) կազմման աշխ-ը մնացել է անավարտ:

ՅՈՒՆԳՖՐԱՈՒ (Jungfrau), լ-զանգված և գագաթ Շվեյցարիայում՝ Բեռնի Ալպերում: Բարձր.՝ 4158 *մ*: Կան սառցադաշտեր: Զարգացած է լեռնագնացությունը:

ՅՈՒՆԳԻՆՆԵՀԵ, գետ Չինաստանում: Կազմավորում է *Հայհե* գետը: Երկ.՝ 700 *կմ*, ավազանը՝ 48,5 հզ. *կմ*²: Ձրերն օգտագործում են Պեկինի ջրամատակարարման համար: Հարթավայրում նավարկելի է:

ՅՈՒՆԵՍԿՕ (United Nations Educational, Scientific and Cultural Organization), ՄԱԿ-ի մասնագիտացված հաստատություն: Հիմնադրվել է 1945-ին: Տես *ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն*:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ, հիմնադրվել է 2001-ին Երևանում: Մատուցում է համակողմանի բանկային ծառայություններ: Մասնաճյուղեր ունի ՀՀ-ում և Արցախում, ներկայացուցչություն՝ Մոսկվայում: Կենտրոնատեղին՝ Երևանում:

«ՅՈՒՆԻՈՆ ԿԱՐԲԱՅԴ» (Union Carbide), քիմ. ընկ. ԱՄՆ-ում: Հիմնադրվել է 1917-ին: ԱՄՆ-ում ուրանի արտադր-յան խոշորագույն ընկ-ներից է: Արտադրում է նաև հազվագյուտ մետաղներ, երկաթի համաձուլվածքներ:

«ՅՈՒՆԻՍԵՖ» (United Nations International Children's Emergency Fund), ՄԱԿ-ի մասնագիտացված հաստատություն: Ստեղծվել է 1946-ին: Տես *ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ*:

ՅՈՒՆԿԵՐՍ (Junkers) Հուգո (1859–1935), գերմանացի ավիակոնստրուկտոր և արդյունաբերող: Ստեղծել է մի շարք ինքնաթիռներ՝ առաջին ամբողջամետաղ. Յու-1-ը (1915), փոխադր. Յու-52-ը, նաև ավիացիոն շարժիչներ: Հիմնադրել է մի քանի, այդ թվում՝ «Յունկերս» ինքնաթիռաշին. (1919–45) ֆիրմաներ: Առավել հայտնի են վերջինիս արտադրած Յու-87 և -88 ռմբակոծիչները, Յու-13, -52, -9 ռազմափոխադր. ինքնաթիռները:

ՅՈՒՆՆԱՆ (Yúnnán), նհնգ Հվ-արմ. Չինաստանում: Տարածքը՝ 389 հզ. *կմ*², բն.՝ 46 մլն (2010): Կենտրոնը՝ Կունմին:

ՅՈՒՆՆԱՆԻ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ, Յուննան Գույչժուի բարձրավանդակի առավել բարձր մասը Չինաստանի հվ-ում: Բարձր.՝ 1800–2000 *մ*, լ-շղթաներինը՝ 3000–4000 *մ*: Գետերն են Մեկոնգը, Սալուինը, Խանգխան: Տարածքի 20 %-ը զբաղեցնում են անտառները:

ՅՈՒՆՈՆԱ (Iuno), հռոմ. դից-յան գլխ. աստվածուհին, *Յուպիտերի* կինը: Համապատասխանում է հուն. *Հերային*:

ՅՈՒՆՈՆԱ, աստղակերպների գլխ. գոտու փոքր մոլորակներից (№ 3, ամենախոշորը): Հայտնագործել է Կ. Հարդինգը (Գերմանիա, 1804): Չափերը՝ 290 x 245 *կմ*, Արեգակից հեռ.՝ 1,99–3,55 *ա. մ.*:

ՅՈՒՆՍՈՆ, Յոնսոն (Johnson), Էյվինդ (1900–1976), շվեդ գրող: Հեղինակ է «Վեպ Ուլոֆի մասին» (1934–37) ռեալիստ. ինքնակենսագր. շարքի, «Կրիլոն» (1941–43) եռերգության, նաև «Ողիսական»-ի սյուժեով «Ալեբախություն և ափեր» (1946) փիլ. վեպի, փիլ-պատմ. «Անուրջներ վարդերի ու կրակի մասին» (1949), «Նորին մեծության ժամանակաշրջանը» (1960) վեպերի: Նոբելյան մրց. (1974):

ՅՈՒՆՏՈՒՆԵՆ Սուլո Խեյկինի (1915–1980), կարել. նկարիչ: Կարելա-ֆինն. ԽՍՀ (1953), ԽՍՀՄ (1959) արվ. վաստ. գործիչ: Կարելա-ֆինն. ԽՍՀ (1970), ԽՍՀՄ (1980) ժող. նկարիչ: 1953–67-ին՝ Կարել. ԻԽՍՀ նկարիչների միության նախագահ: Հեղինակ է լակոնիկ-ընդհանրացված, զուսպ հուզ. բնապատկերների («Աշնանային Օնեգո», 1953), քաղաք. պատկերների («Սահմանամերձ հանրապետության բնապատկեր», 1972):

Կարել. ԻԽՍՀ Պետ. մրց. (1969):

«ՅՈՒՇԱՐԱՐ», թատեր., գր-գեղ. պատկերազարդ հանդես, 1912-ից՝ ամսանախ (1907–09, 1912–13, Թիֆլիս): Հրտ-խմբներ՝ Արամ Վրույր, Գասպար Իփեկյան:

«ՅՈՒՇԱՐԱՐ», ազգ., մշակութ., կրթ. տեղեկատու պարբերաթերթ (1914–25, Բոստոն, 1925–62, Նյու Յորք): ՀԲԸՄ Ամերիկ. կենտր. հանձնաժողովի պաշտոնաթերթ: Խմբ-ներ՝ Վահան Քյուրքջյան, Վահե Հայկ, Երվանդ Մեսիայան, Անդրանիկ Փոլատյան և ուր.: 1963-ին «Յ.»-ի և *«Միութիւն»* թերթերի միավորումով ստեղծվել է *«Յուշարար–Միութիւն»* ամսաթերթը:

«ՅՈՒՇԱՐԱՐ–ՄԻՈՒԹԻՒՆ», տեղեկատու ամսաթերթ (1963-ից, Նյու Յորք): ՀԲԸՄ կենտր. վարչության պաշտոնաթերթ:

Ստեղծվել է ՀԲԸՄ-ի *«Միութիւն»* և *«Յուշարար»* պարբ-ների միավորումով: Խմբ.՝ Անդրանիկ Փոլատյան, 1990–ից՝ խմբագր. խորհուրդ:

ՅՈՒՇԱՔԻ (Նահատակյան Խաչատուր, 1850–1922), աշուղ: 1892–95-ին երգել է *Ջիվանու* խմբում: Պահպանվել են մի քանի երգեր ու մուհամմաներ (հանելուկ), խրատ. ու սիր. երգեր: Հայտնի է «Երկդիմի երգը» (1885):

ՅՈՒՇՄԱՆՈՎ, Նիկոլայ Վլադիմիրովիչ (1896–1946), ռուս. լեզվաբան, արաբագետ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1943): Արաբ-ի գիտ. ուսումնասիրության սկզբնավորողը: Հեղինակ է «Գրական արաբերենի քերականություն» (1928), աֆրիկագիտությանը, ընդհ. հնչյունաբանությանը, գրի և գրավոր խոսքի տեսություններին, այբուբենների և տերմինների միասնականացմանը վերաբերող աշխ-ների:

ՅՈՒՈՆ (Yuon) Կոնստանտին Ֆեոդորովիչ (1875–1958), շվեդ ռուս. գեղանկարիչ, բեմանկարիչ: ՌԽՖՍՀ (1945), ԽՍՀՄ (1950) ժող. նկարիչ: ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի ակադ. (1947): Հեղինակ է պլեներային աշխույժ բնանկարների («Մարտյան արև», 1915), ժանրա-բնանկար. և թեմատիկ նկարների («Արդյունաբերական Մոսկվայի առավոտը», 1949): ԽՍՀՄ Պետ. մրց. (1943):

ՅՈՒՊԻՏԵՐ (Juppiter), գերագույն աստվածը հռոմ. դից-յան մեջ: Համապատասխանում է հուն. *Զևսին*:

ՅՈՒՊԻՏԵՐ (աստղագիտ. նշանը՝♃), հայկ. անվանումը՝ *Լուսնթագ*: Արեգակն. համակարգի խոշորագույն մոլորակը, մեծ արագությամբ պտտվող հսկա գազագունդ է: Ըստ Արեգակից ունեցած հեռ-յան (միջին հեռ.՝ 5,2 *ա. մ.*՝ 778,6 մլն *կմ*)՝ 5-րդը, պտտման սիդերային պարբերությունը՝ 11, 9 տարի, պտտման պարբերությունը՝ մոտ 10 *ժ*: Զանգվածը՝ 1,9 $\cdot 10^{27}$ *կգ* (318 *Երկրի* զանգված), հասարակած. տրամագիծը՝ մոտ 143 հզ. *կմ*, բևեռայինը՝ մոտ 133, 5 հզ. *կմ*: Մթն-ը բաղկացած է H_2 (82 %՝ ըստ զանգվածի), He (17 %) և այլ գազերից (CH_4, NH_3 ևն): Յ. ջերմ. ռադիոճառագայթման հզոր աղբյուր է, ունի ճառագայթ. գոտիներ և ընդարձակ մագնիսոլորտ: Հայտնաբերվել են Յ-ի 63 արբանյակ, որոնցից 4-ը (գալիլեյան) երևում են սիրող. աստղադիտակով: Երևում է նաև 6 հզ. *կմ* լայն-յամբ օղակ, որը դեպի Յ-ի կողմն է ձգվում դիֆուզ. միգամածության տեսքով:

ՅՈՒՋԻՆ (Eugene), ք. ԱՄՆ-ի հս-արմ-ում՝ Օրեգոնի նահ-ում: Բն.՝ 150 հզ. (2006): Լեյն մարզի վարչ. կենտրոնը:

ՅՈՒԴԻՆՈՎ, Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (1927–1973), ռուս. խմբավար: ՌԽՖՍՀ (1970), Ադրբ. ԽՍՀ (1972) ժող. արտիստ: 1958-ից՝ Ռուսաստանի հանրապետ. ռուս. երգչախմբի (1973-ից՝ Յ-ի անվ.) գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1967):

«ՅՈՒՄԱԲԵՐ», ազգ., քաղ., տնտ., գր. պարբերաթերթ (1913–ից, Կահիրե): 1923-ից՝ ՀՅԴ պաշտոնաթերթը: Խմբ-ներ՝ Սուրեն Պարթևյան, Արտավազդ Հանըմյան, Ստեփան Եսայան, Վահան Նավասարդյան, Գաբրիել Լազյան, Բենիամին Թաշյան, Կայծ Կոկանյան, Հայկ Հաջիպողոսյան, Սուրեն Բայրամյան, Զավեն Լիլոզյան (1987–ից): 1944–54-ին լույս է տեսել «Յ.»-ի գր-գեղ. և գիտ. հավելված (խմբ-ներ՝ Գուրգեն Մխիթարյան, Բ. Թաշյան):

ՅՈՒՄԵՖՍՈՆ (Josephson) Էդվարդ (1923–2012), շվեդ դերասան, ռեժ., գրող: 1956-ից՝ Ստոկհոլմի Թագավոր. դրամատիկ. թատրոնի դերասան (1966–75-ին՝ ղեկ.): Նկարահանվել է Ի. Բերգմանի («Դեմք», «Գայլի ժամը», «Շշուկներ և ճիչ», «Աշնանային սոնատ» ևն), Ա. Ա. Տարկովսկու («Նոստալգիա», «Զոհաբերություն») ֆիլմերում: Հեղինակ է վեպերի, պիեսների, սցենարների:

ՅՈՒՄՆԱՆ (Jusnan), գետ Շվեդիայում: Երկ.՝ 440 *կմ*, ավազանը՝ 18,9 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 290 *մ*^{3}/*վ*: Հոսում է Նոռլանդ սարավանդով, թափվում Բալթիկ ծովի Բոտնիկ ծոցը: Կան բազմաթիվ ջրվեժներ, ջրէկ:

ՅՈՒՄՈՎ, Վադիմ Իվանովիչ (1929–2013), ռուս. կինոօպերատոր: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1968), ժող. արտիստ (1979): Ֆիլմերն առանձնանում են գեղանկարչ. արտահայտչականությամբ, դարաշրջանի մթն-ի և կենցաղի ճշգրիտ հաղորդմամբ («Իվանի մանկությունը», 1962, «Ես քայլում եմ Մոսկվայով», 1964, «Մի՛ վշտանա», 1969, «Անդրեյ Ռուբլյով», 1971, «Սոլյարիս» (1973), «Նրանք մարտնչում էին հայրենիքի համար», 1975, Բուլղարիայի հետ, «Կարլ Մարքս: Երիտասարդ տարիներ», հեռուստաֆիլմ, 1978–80, ԳԴԵՀ-ի հետ, «Խորխորատ», 1992, «Տողատակ», 1997–2010, վավերագր. հեռուստասերիալ):

ՌԽՖՍՀ (1977), ԽՍՀՄ (1984) Պետ., Լենինյան (1982) մրց-ներ:

ՅՈՒՍՏԻՆԵՈՍ Ռաֆայել, XV դ-ի իտալացի բանաստեղծ: Բենեդիկտյան կրոնավոր: «Արմենիադոս» (1477) չափածո լատ. երկում փառաբանել է Հայաստանը: Երկը գրաբար է թարգմանել Ղևոնդ *Ալիշանը*:

ՅՈՒՍՏԻՆՈՍ (Justinus), **Մարկոս Հունիանոս**, II–III դդ-ի հռոմեացի պատմիչ: Յ-ի երկը մ. թ. ա. I–մ. թ. I դդ-ի հռոմեացի պատմագիր Պոմպեոս Տրոգոսի չպահպանված աշխ-յան («Ֆիլիպպոսի պատմություն», գիրք 1–44) համառոտ շարադրանքն է, որտեղ տեղեկություններ կան նաև Հայաստանի Աբեմենյան ժամանակաշրջանի, Տիգրան Բ Մեծի գործունեության, Հայաստանի աշխարհագրության մասին:

ՅՈՒՍՈՒՊՈՎ, Իբրահիմ (1929–2008), կարակալպակ բանաստեղծ: Կարակալպակ. ԻԽՍՀ (1974) և Ուզբ. ԽՍՀ ժող. բանաստեղծ: Ուզբեկստանի հերոս (2004): Հեղինակ է արդիական թեմաներով «Յոթ լեռնանցք» (1962), «Դարի ընթացքը» (1968), «Տումարիս և այլ պոեմներ» (1974), «Վարդեր և օշինդր» (1981), «Հույսի ափ» (1990) քնար. բանաստեղծությունների ու պոեմների ժող-ների, նաև պիեսների, պատմվածքների, գրաքննադատ. գործերի:

«ՅՈՒՍՈՒՖ ԵՎ ԶՈՒԼԵՅԽԱ», Արևելքի մի շարք ժողդ-ների գր-բանահյուս. հուշարձան: Հիմքում Աստվածաշնչից և Ղուրանից հայտնի Հովսեփ Գեղեցիկի (Յուսուֆ) մասին լեգենդն է: Հայտնի են IX–XV դդ-ի բազմաթիվ փոխադրումներ (հեղինակներ՝ Ջամի և ուր.): Վերագրել են Ֆիրդուսուն:

ՅՈՒՍՈՒՖՅԱՆ Պողոս (1768–1844), պետ. գործիչ: Եղել է Եգիպտոսի կառավարիչ *Մուհամմեդ Ալիի* թարգմանիչը, խորհրդատուն, եկամուտների ու գանձարանի կառավարիչը, ԱԳ և առևտրի նախարարը (նազիր): Ունեցվածքը կտակել է հայ համայնքին:

ՅՈՒՎԵՆԻԼ ՀՈՐՄԱՆ միջատների, արտադրվում է հարակից մարմնի գեղձերում. էկդիզոնի հետ կարգավորում է միջատների կերպարանափոխությունը, թրթուրային փուլում ապահովում մաշկափոխության բնականոն ընթացքը: Յ. հ-ի սինթետիկ նմանակներն օգտագործվում են որպես միջատասպան:

ՅՈՒՎԱՍԿՅՈՒԼՅԱ (Jyvaskyla), ք. Ֆինլանդիայում՝ Յուվյասյարվի լճի ափին, Կեսկի Սուոմի լյանի վարչ. կենտրոնը: Բն.՝ 137 հզ. (2015):

ՅՈՒՏԱ (Utah), նահց ԱՄՆ-ի արմ-ում: Տարածքը՝ 219,9 *կմ*^{2}, բն.՝ 3 մլն (2014): Վարչ. կենտրոնը՝ Սոլթ Լեյկ Սիթի:

ՅՈՒՏԻԿԱ (Utica), ք. ԱՄՆ Նյու Յորք նահց-ում: Նվինգստ՝ Էրի ջրանցքի վրա: Բն.՝ 317 հզ. (Ռում ք-ի և արվարձանների հետ, 2001):

ՅՈՒՏԼԱՆԴԻԱ, թ–կղզի Դանիայում (մեծ մասը) և Գերմանիայում՝ Հս. և Բալթիկ ծովերի միջև: Տարածքը՝ մոտ 40 հզ. *կմ*^{2}, երկ.՝ մոտ 300 *կմ*, բարձր.՝ 173 *մ*:

ՅՈՒՏԼԱՆԴԻԱՅԻ ՇԱԿԱՏԱՄԱՐՏ 1916, ծովամարտ ԱՀՊ-ի ժամանակ անգլ. և գերմ. նավատորմերի գլխ. ուժերի միջև՝ Հս ծովում՝ Յուտլանդիա թ–կղզուց արմ., մայիսի 31-ից հունիսի 1-ը: Ավարտվել է անարդյունք, սակայն բրիտ. նավատորմը պահպանել է իր գերիշխանությունը ծովում:

ՅՈՒՏԿԵՎԻՉ Սերգեյ Իոսիֆովիչ (1904–1985), ռուս. ռեժ., կինոգետ, բեմանկարիչ: ԽՍՀՄ ժող. արտիստ (1962): Սոց. աշխ. հերոս (1974): ԳԴԵՀ-ի արվ-ի ակադ-ի անդամ (1961): Նկարահանել է «Հրացանավոր մարդը» (1938), «Պատմվածքներ Լենինի մասին» (1958), «Լենինը Լեհաստանում» (1966), նաև «Ժանյակներ» (1928), «Օթելլո» (1956) ևն: Մոսկվայի սատիրայի թատրոնում բեմադրել և ձևավորել է Վ. Վ. Մայակովսկու պիեսներից («Բաղնիք», 1953, Ն. Վ. Պետրովի և Վ. Ն. Պլուչեկի հետ, «Փայտոջիլ», 1955, Վ. Ն. Պլուչեկի հետ, ևն), Մոսկվայի երաժշտ. կամեր. թատրոնում՝ Ա. Ա. Բլոկի «Ծաղրածուն» և «Անծանոթուհին»: Եղել է «Կինոռաառաբանի» (h. 1, 2, 1966, 1970) և «Կինո» հանրագիտ. բառարանի (1986) գլխ. խմբ-ը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1947, 1967, 1983):

ՅՈՒՐԱ, Գնատ (Իգնատի) Պետրովիչ (1887/88–1966), ուկրաինացի դերասան, ռեժ.: Ուկր. ԽՍՀ (1938), ԽՍՀՄ (1940) ժող. արտիստ: Կիևի Ի. Յ. Ֆրանկոյի անվ. ուկր. թատրոնի հիմնադիրներից [1920, մինչև 1961-ը՝ գլխ. ռեժ. (նաև տնօրեն), 1954–61-ին՝ Մ. Մ. Կրուշելնիցկու հետ]: Դերերից են՝ Ֆիգարո (Պ. Օ. Բոմարշեի «Ֆիգարոյի ամուսնությունը» ևն): Բեմադրել է Ի. Կ. Միկիտենկոյի «Դիկտատուրա» (1929), Պ. Բոմարշեի «Ֆիգարոյի ամուսնությունը» (1933), Ի. Ֆրանկոյի «Գողացած երջանկություն» (1940), Ի. Ա. Կոչերգայի «Սվիչկայի հարսանիքը» (1960) ևն: Նկարահանվել է կինոյում: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949, 1951):

ՅՈՒՐԱ (Jura), լ–շղթա Ֆրանսիայում և Շվեյցարիայում: Երկ.՝ շուրջ 250 *կմ*: Բարձր.՝ մինչև 1718 *մ*: Զարգացած է կարստը: Յ-ի անունով է կոչվել *Յուրայի ժամանակաշրջանը*:

ՅՈՒՐԱՅ ԴԱԼՄԱԹԻՆԱՑԻ (Juraj Dalmatinac) Զորջո դա Սեբենիկո (Giorgio da Sebenico, 1410-ական թթ.–1473), Վաղ Վերածննդի շրջանի դալմաթինացի ճարտ., քանդ.: Լավագույն աշխ-ը Շիբենիկի տաճարն է (1441–73)՝ իր քանդակազարդերով, որտեղ համադրել է գոթ. ոճի ու Վերածննդի շրջանի տարրեր:

ՅՈՒՐԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ, յուրա, մեզոզոյան խմբի 2-րդ համակարգը, համապատասխանում է Երկրի պատմության ***մեզոզոյան դարաշրջանի*** 2-րդ ժամանակաշրջանին: Կոչվել է ***Յուրա*** լ-շղթայի անունով: Հաջորդում է տրիասի, նախորդում՝ կավճի ժամանակաշրջանին: Տևողությունը՝ 53 մլն տարի (մ. թ. ա.185 մլն-ից մինչև 5 մլն տարի): Տրոհվում է ներքին, միջին և վերին բաժինների: Կենդ. աշխարհում անողնաշարների ներկայացուցիչներն էին ամոնիտները և բելեմնիտները: Լայնորեն տարածված էին զանազան երկփեղկանիները, խոշորաչափ ցամաք. և լողացող մողեսները:

ՀՀ-ում Յ. ժ-ի ապարներ կան հս-արլ. մասերում, Զանգեզուրում, որոնց հետ են կապված պղնձի և բազմամետաղ. մի շարք հանքավայրերը (Ալավերդի, Շամլուղ, Ախթալա, Կապան ևն):

ՅՈՒՐԳԵՆՄԱՆ, ռուս. նոտահրտ-ներ: **Պյոտր Իվանովիչ Յ.** (1836–1903/04), հաս. գործիչ: Մոսկվայում ստեղծել է երաժշտ. հրտչ-յուն (1861): 1897-ից՝ մասնաճյուղ Լայպցիգում: Որդին՝ **Բորիս Յ.** (1868–1935), հրտչ-յունը ղեկավարել է մինչև 1918-ը, կազմել է Պ. Ի. Չայկովսկու երկերի թեմատիկ ցուցիչը (1897): Հեղինակ է «Ակնարկ նոտատպագրության պատմության» (1928) գրքի:

ՅՈՒՐԵՎ, Բորիս Նիկոլաևիչ (1889–1957), ավիացիոն տեխնիկայի բնագավառի ռուս գիտնական: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1943): Ճարտարագիտատեխ. ծառայության գնդ-լեյտ. (1944): Աշխ-ները վերաբերում են օդ. պտուտակի և ուղղաթիռների տեսությանն ու նախագծմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943, 1946):

ՅՈՒՐԵՎ, Յուրի Միխայլովիչ (1872–1948), ռուս դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1939): 1893-ից՝ Ս. Պետերբուրգի Ալեքսանդրյան թատրոնի դերասան (1922–28-ին՝ գեղ. ղեկ.): Մարմնավորել է հերոսա-ռոմանտիկ. կերպարներ (Դոն Ժուան՝ Մոլիերի «Դոն Ժուան», Չացկի՝ Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս», Ռոմեո՝ Վ. Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ», Կառլ Մոոր՝ Ֆ. Շիլլերի «Սեր և խարդավանք», Արբենին՝ Մ. Յ. Լերմոնտովի «Դիմակահանդես», ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1943):

ՅՈՒՐԵՎ, Վասիլի Յակովլևիչ (1879–1962), ռուս. ընտրասերումնաբան, հացահատիկ. բույսերի ընտրասերման և սերմնաբուծության հիմնադիրներից ԽՍՀՄ-ում: Ուկր. ԽՍՀ ԳԱ ակադ. (1945), ՀամԳԱ պատվ. անդամ (1956): Սոց. աշխ. հերոս (1954, 1959): Ցորենի, աշորայի, գարու, վարսակի, կորեկի մի շարք սորտերի հեղինակ է: ԽՍՀՄ Պետ. մրց. (1947):

ՅՈՒՐԵՎԱ, Իզաբելա Դանիլովնա (1900/02–2000), հրեա ռուս. էստրադ. երգչուհի (կոնտրալտո): ՌԴ ժող. արտիստ (1992): Երգել է 1925-ից, երկացանկում՝ գնչուական (նաև ռոմանսներ), ռուս կոմպոզիտորների («Երբ թափվում են տերևները», «Սպիտակ գիշեր» ևն) երգեր ևն:

ՅՈՒՐԻ (Urey) Հարոլդ Քլեյթոն (1893–1981), ամերիկացի ֆիզիկոս և ֆիզքիմիկոս: Հայտնաբերել է ***դեյտերիումը*** (1931): Աշխ-ները վերաբերում են իզոտոպների քիմիային և բաժանմանը, երկրա- և տիեզերաքիմիային, աստղաֆիզիկային, կյանքի ծագման խնդիրներին: Նոբելյան մրց. (1934):

ՅՈՒՐԻ (Ewry) Ռեյմոնդ Քլարենս, **Ռեյ** (1873–1937), ամերիկացի մարզիկ (աթլետիկա, ցատկ տեղից): Օլիմպ. խաղերի 8-ակի չեմպիոն (1900, 1904, 1908):

ՅՈՒՐԻ ԳԱԳԱՐԻՆԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Մոդ Թագուհու Երկրի կենտր. մասում (Արլ. Անտարկտիդա): Բարձր.՝ 2508 *մ*: Քարտեզի վրա նշանակել է ԽՍՀՄ արշավախումբը 1961-ին:

ՅՈՒՐԻ ՎԼԱԴԻՄԻՐՈՎԻՉ Դոլգորուկի (1090-ական թթ.–1157), Ռոստով-Սուզդալի (1108–34, 1135–49, 1151–55), Կիևի մեծ (1149–51, 1155–57) իշխան: ***Վլադիմիր Վսևոլոդովիչ Մոնոմախի*** որդին: 1125-ին Ռոստով-Սուզդալյան իշխանության մայրաքաղաքը Ռոստովից տեղափոխել է Սուզդալ: Կիևի մեծ իշխան Մստիսլավ Վլադիմիրովիչի մահից հետո փորձել է տիրել նաև հվ. հողերին (այստեղից էլ՝ Դոլգորուկի – «Երկայնաբազուկ» մականունը): Նրա օրոք՝ 1147-ին, 1-ին անգամ հիշատակվում է Մոսկվան, որը 1156-ին նա ամրացրել է փայտե նոր պարիսպներով: Հավանաբար թունավորել են Կիևի բոյարները:

ՅՈՒՐԻԻ ԳԻՇԵՐՎԱ ԱՊՍՏԱՄԲՈՒԹ-ՅՈՒՆ 1343–45, ժող. ընդվզում Էստոնիայում գերմանացի և դանիացի ավատատերերի դեմ: Սկսվել է ապրիլի լույս 23-ի գիշերը (***Յուրիի օրը***, գարնանը), հուլիսի 24-ին՝ Սաարեմաա կղզում: 1343-ի վերջին Տևտոնյան և Լիվոնյան օրդենների միացյալ զորքերը ճնշել են ապստամբությունը ցամաքում, 1345-ի գարնանը ճնշել ապստամբությունը նաև Սաարեմաա կղզում:

ՅՈՒՐԻԻ ՕՐ (գարնան. և աշնան.), եկեղեց. տոների անվանում՝ նվիրված սբ Գեորգիին (Եգոր, Յուրի): Տոնվում է ապրիլի 23-ից նոյեմբ. 26-ն ընկած ժամանակահատվածում (սբ Գեորգիի հրաշքն օձի և գեղեցկուհու մասին, որը կենցաղ., բանահյուս. և գր. սյուժե է): Յ. օ. ժող. ագրար. օրացույցի հիմքն է:

ՅՈՒՐԻՅԱՆՍ (Jurjāns), **Յուրիյան,** Անդրեյս (1856–1922), լատիշ կոմպոզիտոր, բանահավաք: Լատիշ. գիտաերաժշտ. բանահյուսության հիմնադիրներից: Հեղինակ է ազգ. առաջին վոկալ-գործիք. («Հայրենիքիս» կանտատ, 1886) և սիմֆ. («Լատիշ ժողովրդի ազատագրումը» սիմֆ. պատկեր, 1891) երկերի, «Լատիշական ժողովրդական երաժշտության նյութեր» (1894–1921) աշխ-յան և այլ գործերի:

ՅՈՒՐԿՈՒՆԱՍ (Jurkūnas) Վիտաուստաս (1910–1993), լիտվացի գրաֆիկ: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1963): Հեղինակ է բանաստեղծ. հատտոց. փորագրությունների («Կլինեմ կթվորուհի», 1960, լինոփորագրություն), գրքերի ձևավորումների և պատկերազարդումների:

ՅՈՒՐՄԱԼԱ, (Jurmala), ք. Լատվիայում, կլիմ. և ջերմուկացեխաբուժ. առողջավայր Ռիգայի ծոցի ափին: Բն.՝ 49,6 հզ. (2015): Անցկացվում են երաժշտ. և հումոր. ամենամյա փառատոներ: Հիմնադրվել է 1785-ին:

ՅՈՒՐՈՎՄԿԻ (Սարուխանով, Սարուխանյան) Յուրի Իլյայի (1894–1959), դերասան, ռեժ.: Լատվ. ԽՍՀ (1950), ԽՍՀՄ (1956) ժող. արտիստ: 1924-ից՝ Ռիգայի ռուս. դրամայի, 1934-ից, միաժամանակ՝ Բանվ. թատրոնների դերասան (Չացկի՝ Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս», Լիր, Մակբեթ, Վ. Շեքսպիրի «Լիր արքա», «Մակբեթ» ևն): Բեմադրել է Ա. Ե. Կոռնեյչուկի «Պլատոն Կրեչետ» (1937), Ռ. Բլաումանիսի «Կրակի մեջ» (1955) և այլ գործեր: Նկարահանվել է կինոյում («Հանդիպում Էլբայի վրա», 1949, «Ժուկովսկի», 1950, ևն):

ԽՍՀՄ Պետ. մրց. (1950, 1951): «Պատվո նշան», Աշխ. կարմիր դրոշի շքանշաններ:

ՅՈՒՐՍԵՆԱՐ (Yourcenar) Մարգերիտ (1903–1987), ֆրանսիացի գրող: Ֆրանսիայի ակադ-ի 1-ին կին անդամը (1980): 1939-ից՝ ԱՄՆ-ում: Հեղինակ է սուր սյուժեներով «Ադրիանի հիշողությունները» (1951), «Փիլիսոփայական քար» (1968) փիլ. վեպերի, նաև «Ինչպես հոսող ջուրը» (1982) վիպակների ժող-ի, «Արևելյան նովելներ» (1938) պիեսների, «Երանելի հիշողություններ» (1974) ինքնակենսագր. երկի, նաև պատմվածքների շարքի:

ՅՈՒՐՍԿԻ Սերգեյ Յուրևիչ (ծ. 1935), ռուս. դերասան, ռեժ.: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1987): Ն. Մ. ***Տենյակովայի*** ամուսինը: 1957-ից՝ Լենինգրադի Մեծ դրամատիկ., 1979-ից՝ Մոսկվայի Մոսսովետի անվ. թատրոնների դերասան: 1992-ին Մոսկվայում հիմնադրել է «Սերգեյ Յուրսկու դերասանական արվեստանոց» թատրոնը: Էքսցենտրիկ և գրոտեսկ. դերերի վարպետներից է (Չացկի՝ Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս», Օսիպ՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», ևն): Նկարահանվել է կինոյում («Առաջ, ժամանակ», «Ոսկե հորթ», «Հանդիպման վայրը փոխել չի կարելի», հեռուստաֆիլմ ևն): Բեմադրել է Ա. Ն. Օստրովսկու «Ճշմարտությունը լավ է, իսկ երջանկությունն ավելի լավ» (1980, Գրոզնովի դերում՝ Յ.), «XXI դ. խաղամոլները» (1992, ըստ Ն. Վ. Գոգոլի), Ի. Վացետիսի «Նախաբաղնիք» (2006) և այլ պիեսներ, նկարահանել «Չեռնով/Chernov» (1990) ֆիլմը:

ՅՈՒՐՏ (թյուրք.), 1. ինքնուրույն տնտյուն վարող ընտանիք կամ տոհմ: 2. Թաթար. առանձին խանությունների տիրույթների ամբողջությունը: 3. Կենտր. և Միջին Ասիայի ու Սիբիրի ժողդ-ների շարժական կացարանը՝ շրջանաձև հատակագծով և գմբեթաձև տանիքով:

«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ, կապի և հեռահաղորդակցության ծառայություններ մատուցող ընկ. ՀՀ-ում: Հիմնադրվել է 2007-ին: Տրամադրում է լայնաշերտ ինտերնետ, «Այ Փի» հեռուստատեսություն և սևեռված հեռախոսակապ: 2015-ին իրեն է միացրել շարժական կապի ծառայություններ մատուցող «Օրանժ» ընկ-ը: Կենտրոնատեղին՝ Երևանում:

Ն

Ն, հայ. այբուբենի 22-րդ տառը, անվանումը՝ նու: Ունի ***գրչագիր***, ***երկաթագիր***, ***բոլորգիր***, ***շղագիր***, ***նոտրգիր*** տառատեսակները: Հայ-ի ատամնային ձայնորդ ռնգային բաղաձայն հնչյուն (հնչույթ) է: Թվային արժեքը՝ 400:

ՆԱԲԱԹԵԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, **Նաբաթեա**, նաբաթեացիների (արաբ. ցեղախումբ) պետություն՝ մ. թ. ա. III դ-ի վերջ–մ. թ.106-ին ժամանակակից Հորդանանի թագավորության տարածքում: Մայրաքաղաքը՝ Պետրա: Հզորության է հասել Հարիթաթ III-ի (մ. թ. ա. 87–62) օրոք: Վերջինս Դամասկոսի մոտ պարտվելով՝ ***Տիգրան Բ***-ին զիջել է Դամասկոսը և ընդունել հայոց գերիշխանությունը: Ն. թ. նվաճել է Հռոմը:

ՆԱԲԵՐԵԺՆԻԵ ՉԵԼՆԻ (1982–88-ին՝ Բրեժնև), ք. (1930-ից) ՌԴ Թաթարստանում: Նվինգստ՝ Կամայի ափին: Բն.՝ 524,4 հզ. (2015): Հայտնի է Կամայի ավտոմոբիլ. գործարանը («ԿԱՄԱԶ», ռուս.): Ունի 2 բուհ, տիկնիկ. թատրոն ևն:

«ՆԱԲԻ» (ֆրանս.՝ nabis – մարգարեներ, հինեգիպտ.՝ «նաբի» – մարգարե), ֆրանսիացի նկարիչների խումբ (մոտ 1890–1905): Պ. ***Գոգենի*** արվ-ի ազդեցությամբ ստեղծել են մոդեռն ոճի՝ գրկ. սիմվոլիզմին մոտ տարբերակ (Ս. Դենի, Պ. Բոննար, Է. Վյույար, Պ. Սերյուզիե և ուր.):

ՆԱԲԻ ՀԱԶՐԻ (Նաբի Ալեքպեր օղլի Բաբան, 1924–2007), ադրբեջանցի բանաստեղծ: Ադրբ. ԽՍՀ արվ. վաստ գործիչ (1979), ժող. բանաստեղծ (1984): Հեղինակ է «Ծովն սկսվում է բարձունքներից» (1971), «Ժամանակի հունը» (1976), «Աստղային կարավան» (1979), «Ծովն ինձ հետ է» (1983) ժող-ների, նաև պոեմների: Հայ. հրատարակվել է «Հովիտներ» (1974) բանաստեղծությունների ու պոեմների ժող-ր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1973):

ՆԱԲԻԵՎ Ռահմոն (1930–1993), տաջիկ պետ. և քաղ. գործիչ: 1973–82-ին՝ ՆԽ նախագահ: 1982–85-ին՝ Տաջիկստանի կոմկուսի ԿԿ 1-ին քարտուղար: 1991–92-ին՝ Տաջիկստանի նախագահ:

ՆԱԲԻՄ (ծ. թ. անհտ–մ. թ. ա. 192), Սպարտայի վերջին տիրակալը՝ 207-ից: Բռնագրավել է խոշոր հողատերերի հողերն ու բաժանել անհող սպարտացիներին և հելոտներին: Պարտվել է Աքայական միության դեմ պայքարում:

ՆԱԲՈԿՈՎ Վլադիմիր Դմիտրևիչ (1869–1922), ռուս քաղ. գործիչ, իրավաբան, հրապարակախոս: Վ. Վ. ***Նաբոկովի*** հայրը: «Ազատագրության միության» և Կատեդետների կուս-յան հիմնադիրներից: «Վեստնիկ պարտիի նարոդնոյ սվոբոդի» (ռուս., 1906–08) ամսագրի, «Ռեչ» (ռուս., 1908-ից) թերթի խմբ-ներից: 1917-ին՝ ***Ժամանակավոր կառավարության*** գործերի կառավարիչ: 1918-ի նոյեմբ-ից՝ Ղրիմի երկրամասի կառ-յան արդարադատության նախարար: 1919-ի ապրիլից՝ վտարանդի: Հեղինակ է «Ժամանակավոր կառավարություն» (1921) հուշագրության:

ՆԱԲՈԿՈՎ Վլադիմիր Վլադիմիրովիչ (1899–1977), ռուս գրող, թարգմանիչ, գրականագետ: Վ. Դ. ***Նաբոկովի*** որդին: 1919-ից՝ վտարանդի: 1938-ից գրել է անգլ.: Հեղինակ է «Լուժինի պաշտպանությունը» (1929–30), «Մահապատժի հրավեր» (հակաուտոպիա, 1935–36), «Պարգև» (1937–38), «Պնին» (1957), նաև «Մաշենկա» (1926), «Քաջագործություն» (1931–32) վեպերի, «Չոորբայի վերադարձը» (1930) քնար. նովելների ժող-ի, «Հիշողություն՝ն, խոսի՛ր» (1967) հուշագրության, «Նիկոլայ Գոգոլ» (1944) աշխ-յան և այլ գործերի: Հայտնի է Ն-ի «Լոլիտա» (1955) սիրային-էրոտիկ վեպը:

ՆԱԲՈՊԱԼԱՍԱՐ, քաղդեական հարստության հիմնադիրը Բաբելոնում, կառավարել է մ. թ. ա. 626–605-ին:

ՆԱԲՈՒ, իմաստության աստվածը աքքադ. դից-յան մեջ, գրիչների և գրելու արվ-ի հովանավորը:

ՆԱԲՈՒԿՈԴՈՆՈՍՈՐ II, **Նաբուքուդուռիուցուր** (ծ. թ. անհտ–մ. թ. ա. 562), Բաբելոնի թագավոր՝ մ. թ. ա. 605-ից: Նվաճել է Ասորիքը, Պաղեստինը, Հուդայի թագավորությունը [ավելի քան 10 հզ. հրեաների գերեվարել է Բաբելոն («Բաբելոնյան գերություն»՝ 597–539/538)], Փյունիկիան, Հս. Միջագետքի մի մասը, ներխուժել է Եգիպտոս: Բաբելոնը դարձել է Մերձ. Արևելքի խոշոր տերություններից:

ՆԱԳԱԵՎ Ալեքսանդր Իվանովիչ (1704–1781), ռուս հիդրոգրաֆ և քարտեզագիր, ծովակալ (1769): Հեղինակ է Բերինգի ծովի առաջին քարտեզների (1745) և Բալթիկ ծովի ատլասի ու նավավարության ձեռնարկի (1752): Ն-ի պատվին է կոչվել Նագաևի ծովախորշը՝ Օխոտի ծովում:

ՆԱԳԱԼԵՆԴ, նահանգ Հնդկաստանի հս-արլ-ում: Տարածքը՝ 16 հզ. *կմ*^{2}, բն.՝ 2 մլն (2011): Վարչ. կենտրոնը՝ Կոհիմա:

ՆԱԳԱՆ, բելգիացի գինագործ Էմիլ և Լեոն Նագանների (Nagant) ստեղծած (1877-ից) համակարգի ***ռևոլվեր***: XIX դ-ի վերջից մի շարք երկրների սպառազինությունում էր: 1895-ի նմուշի Ն-ի (տրամաչափը՝ 7,62 *մմ*) նշանառման հրաձգ. հեռահարությունը 100 *մ* էր, թմբուկի տարողությունը՝ 7 փամփուշտ:

ՆԱԳԱՆՈ (Nagano) Քենթ (ծ. 1951), ամերիկացի դիրիժոր: Լիոնի (1989–98), Լոս Անջելեսի (2001–06) օպեր. թատրոնների, Բավարիայի (2006-ից) սիմֆ. նվագախմբերի երաժշտ. ղեկ., Մանչեստրի «Հալլե-նվագախմբի» (1992–2000), Բեռլինի սիմֆ. նվագախմբի գլխ. դիրիժոր (2000–06), Օ. Մեսսիանի, Ֆ. Պուլենկի, Ս. Ս. Պրոկոֆևի և ուր. երկերի լավագույն մեկնաբաններից:

ՆԱԳԱՆՈ, ք. Ճապոնիայի Հունսյու կղզում: Համանուն պրեֆեկտուրայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 378 հզ. (2014): Ունի համալսարան: Բուդդիզմի կենտրոն է: Ն-ում անցկացվել են XVIII ձմեռ. օլիմպ. խաղերը (1998):

ՆԱԳԱՈԿԱ, ք. Ճապոնիայի Հոնսյու կղզում: Բն.՝ 282,6 հզ. (2010):

ՆԱԳԱՍԱԿԻ, ք-նվինգստ Ճապոնիայի Կյուսյու կղզում՝ համանուն ծոցի ափին: Համանուն պրեֆեկտուրայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 434 հզ. (2014): Հայտնի է XII դ-ից: Ունի համալսարան: 1945-ի օգոստ. 9-ին Ն. ենթարկվել է ԱՄՆ-ի ատոմ. ռմբակոծության: Ավերվել է 1/3-ը: Սպանվել և վիրավորվել է 75 հզ. մարդ: 1956-ից Ն-ում տեղի են ունենում ատոմ. և ջրածնային զենքի արգելման միջազգ. համաժողովներ: Ճարտ. հուշարձաններից պահպանվել են Սուվա սինտոիստ. սրբավայրը (XVI դ.), Սուֆուկուձի, Կոֆուկուձի բուդդ. տաճարների համալիրները (XVII դ.), Մեգանեբասի կամուրջը (XVII դ.):

ՆԱԳԱՐԿՈՒԻԼ (Նագերկոիլ), ք. Հնդկաստանի հվ-ում՝ Թամիլանդ նհնգ-ում: Բն.՝ 225 հզ. (2011):

ՆԱԳԱՐՋՈՒՆԱ, II–III դդ-ի հնդիկ փիլ., բուդդայականության ***մադհյամիկա*** դպրոցի հիմնադիրը: Ն. նշանավոր է ոչ թե սեփ. հայեցակարգերի համակարգ. շարադրանքով, այլ դիալեկտիկ. յուրօրինակ մեթոդի միջոցով տարբեր ուսմունքների (վայբհաշիկա, սաուտրանտիկա) տրամաբ. կառուցվածքի անհեթեթության ցուցադր. հերքումով: Հեղինակ է «Մուլամադհյամիկա-կարիկա» աշխ-յան, որը ներառվել է բուդդ. կանոնիկ ժող-ում (չին. և տիբեթ.):

ՆԱԳԱՇՅԱՆ Անուշ Հրանդի (ծ. 1961), բանաստեղծուհի: Բանասիր. գիտ. թեկնածու (1995): Հեղինակ է «Սիրոյս տաք շունչէն» (1993), «Անձրեւոտ սէր» (1998), «Եթէ յանկարծ տեսնես իրեն...» (2003), «Հատընտիր» (2004), «Ես հայ եմ…» (2013) և այլ բանաստեղծությունների ժող-ների, «Այդ սերմը ես էի...» (2016) հուշագրության: ՀԳՄ ոսկե մեդալ (2004):

ՆԱԳԵԼ (Nagel) Օտտո (1894–1967), գերմանացի գեղանկարիչ: ԽՍՀՄ Գեղարվ-ի

ակադ–ի պատվ. անդամ (1958): Բեռլինի Գերմ. արվ–ի ակադ–ի հիմնադիրներից (1950, 1956–62–ին՝ նախագահ): Հեղինակ է «Զինված բանվորները» (1931), «Շինա–բար–քարգործը» (1953) և այլ գործերի, դի–մանկարների, կավճաներկով կատարված բնանկարների: ԳԴԵՀՀ Ազգ. մրց. (1950):

ՆԱԳԻ, կիսաստված. օձակերպ էակներ հինդուիստ. և բուդդ. առասպելներում: Բնակվել են ստորերկրյա աշխարհում և օվկ–ում:

ՆԱԳԻԲԻՆ Յուրի Մարկովիչ (1920–1994), ռուս գրող: Հեղինակ է «Ռազմաճա–կատից եկած մարդը» (1943), «Տունից առաջ» (1960), «Ուրիշի սիրտը» (1969), «Իմ մանկության նրբանցքները» (1971), «Վեր կաց և գնա՛» (1989), «Առաջնորդ–ների սերը» (1991) և այլ վիպակների ու պատմվածքների ժող–ների, «Մթություն՝ թունելի վերջում» (1994) վիպակների, «Դափնիսը և Քլոեն անձի պաշտամունքի, վոյուևտարիզմի և լճացման ժամանա–կաշրջանում» (1994) վեպի: Հայ. հրա–տարակվել են «Պատմվածքներ» (1963), «Փոքր պատմվածքներ մեծ կյանքի մա–սին» (1982), «Դադար» (1983) ժող–ները:

ՆԱԳՈՅԱ, ք–նվինգստ Ճապոնիայի Հոնսյու կղզում: Այտի պրեֆեկտուրայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 2,2 մլն (2014): Տոկայ ինդուստրիալ–ագրար. շրջանի տնտ. միջուկն է: Ունի համալսարան, 2 թանգարան, բուսաբ. և կենդբ. այգիներ: Ճարտ. հուշարձաններից են Ացուտա (մ. թ. սկիզբ) սինտոիստ. սրբավայրը, դդյակը (XVII դ.), Թոֆուկուձի տաճարը (VIII դ.):

ՆԱԳՈՐՍԿԻ Վալենտին Ֆեդոսեևիչ (1845–1912), կենդանահամաճարակագետ: Աշխ–ները վերաբերում են կենդանիների հա–մաճարակի կանխարգելմանը և դրա դեմ պայքարին: Կազմել է Ռուսաստանում 1–ին անասնաբուժ. օրենսդրությունը:

ՆԱԳՊՈՒՐ, ք. Հնդկաստանի կենտր. մա–սում՝ Մահարաշտրա նահանգ–ում՝ Նար գետի ափին: Բն.՝ 2,4 մլն (2011): Բամբակե գործ–վածքների արդ–յան կենտրոն է:

ՆԱԳՈՒԼՅԱՆ Մարտիրոս Կարապետի (1920–1945), ավիացիայի լեյտ.: ԽՄ հերոս (1945, հետմահու): ՀՄՊ–ին մասնակցել է 1944–ից՝ 1–ին մերձբալթյան ռազմաճակա–տի գրոհային ավիացիոն Նովոգեորգիև–յան գնդի կազմում:

ՆԱԳՈՒՐՍԿԻ (Nagórski) Յան Իոսիֆովիչ (1888–1976), լեհ ռազմ. և բևեռ. օդաչու: 1909–ից՝ ռուս. բանակում: 1914–ին հիդ–րոինքնաթիռով կատարել է առաջին թռիչքներն Արկտիկա՝ Նոր Երկրի արմ. ափի երկայնքով:

ՆԱԳԵԺԴԻՆԱ Նադեժդա Սերգեևնա (1908–1979), ռուս. բալետի արտիստուհի, բալետմայստեր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1966): Սոց. աշխ. հերոս (1978): 1925–34–ին՝ Սոսկվայի Մեծ թատրոնի պարուհի, 1948–79–ին՝ «Բերյոզկա» խորեոգրաֆիկ անսամբլի (2000–ից՝ Ն–ի անվ.) հիմնա–դիր–ղեկ.: Ստեղծել է մի շարք ռուս. ժող. պարերի բեմ. տարբերակներ («Կեչի», «Աշնանային տոնավաճառում», «Սիբիր–յան սյուիտ» ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

ՆԱԳԻՄ, գետ Արմ. Սիբիրի հս–ում (ՌԴ): Երկ.՝ 545 *կմ*, ավազանը՝ 64 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 590 *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Նումտո լճից և թափվում Կարայի ծովի Օբի ծովախորշը: Նավարկելի է Նադիմ ք–ից (105 *կմ*):

ՆԱԴԻՐ (արաբ.՝ nazir, < nazara – նայել), երկնոլորտի *զենիթին* հակադիր կետը:

ՆԱԴԻՐ ՇԱՀ Աֆշար, **Նադիր Ղուլի խան** (1688–1747), Իրանի շահ՝ 1736–ից: Նրա օրոք ստեղծվել է մեծ տերություն, որի մեջ, բացի Իրանից, ներառվել են Արլ. Վրաստանը, Արլ. Հայաստանը (մինչև Կասպից ծով), Դաղստանը, Աֆ–ղանստանը, Բելուջիստանը, Խիվայի ու Բուխարայի խանությունները, Իրանից վտարել է աֆղաններին և թուրքերին ևն: Սպանվել է:

Ն. շ. հայերին համարել է բնական և պատմ. դաշնակից: Թուրքերի դեմ պա–տերազմներում նրան դաշնակցել են Արցախի, Սյունիքի և Այրարատի հայերը: Սերտ հարաբերությունների մեջ է եղել կաթողիկոս ***Աբրահամ Գ Կրետացու*** հետ, որի խնդրանքով գերությունից ու աքսորից ազատել է շուրջ 7 հզ. հայերի ու վրացիների:

ՆԱԴԻՐԱՋԵ Ալեքսանդր Դավիդի (1914–1987), կիրառ. մեխանիկայի բնագավառի վրացի գիտնական: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1981): Սոց. աշխ. հերոս (1976, 1982): Աշխ–ները վերաբերում են թռչող սարքերի մեխանիկային:

Լենինյան (1966), ԽՍՀՄ Պետ. (1987) մրց–ներ:

ՆԱԴՈՐ, ք. Մարոկկոյում: Նվինգստ՝ Մի–ջերկր. ծովի Սար Չիկա ծովալճակի վրա: Համանուն նահանգ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 152,3 հզ. (2012):

ՆԱԴՍՈՆ Գեորգի Ադամովիչ (1867–1939), ռուս. մանրէաբան: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1929): Յածրակարգ սնկերի ուսումնասի–րությամբ ապացուցել է (1925, ուր. հետ) իոնացնող ճառագայթների ազդեցութ–յամբ արհեստ. մուտացիաների առաջացման ինարավորությունը: Աշխ–ները վերաբերում են մանրէների մակածված փոփոխականությանը, նրանց նոր, կա–յուն ռասաների փորձարար. ստացմանը: Բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ՆԱԶԱՆԻ (Տեր–Մարտիրոսյան Հովհան–նես), **Թաոլանյան Թորոս, Հովհաննես Տերենց** (1870–1912), գրող, աշուղ: Հե–ղինակ է «Սրտի խօսքեր» (1892), «Սիրոյ տաղեր» (1913) բանաստեղծությունների ժող–ների, «Մեր խալֆան» (1906) վիպա–կի: Ն. առավել հայտնի է աշուղ. երգերով («Ես մի խոնաչ թառ ունեի», «Տերն, աչ–քերիդ ատլաս փայլից», «Ո՞ւր ես, ո՞ւր ես, ազիզ աղջիկ», «Յար, քեզ հետ խոսելիք ունեմ» ևն):

ՆԱԶԱՐ ԲՈՒՅՈՒՄ (Նազար Արսենի Ճանճիկյան, ծ. 1944), հրտ., բանաստեղծ: Գրում է թուրք., անգլ.: 1980–ական թթ–ի սկզբից՝ Ստամբուլի «Ադամ» հրտչ–յան տնօրեն: Հեղինակ է «Յուկո – Տանին» (1996, հայ.՝ 1997) և այլ բանաստեղծութ–յունների ժող–ների:

ՆԱԶԱՐԲԱԼԵՎ Նորսուլթան Աբիշի (ծ. 1940), ղազախ պետ., քաղ. գործիչ, Ղա–զախստանի Հանրապետության առաջին նախագահը (1991–ից, վերընտրվել է մի քանի անգամ, վերջին անգամ՝ ցմահ): 1984–89–ին՝ Ղազախ. ԽՍՀ ՆԽ նա–խագահ, 1989–91–ին՝ կոմկուսի ԿԿ 1–ին քարտուղար, 1990–91–ին՝ ԽՄԿԿ ԿԿ քաղբյուրոյի անդամ, 1990–ի փետր–ապ–րիլին, միաժամանակ՝ Ղազախ. ԽՍՀ ԳԽ նախագահ: Ն–ի օրոք Ղազախստանի մայրաքաղաքն Ալմաթիից տեղափոխվել է Աստանա: Խաղաղարար նախաձեռնութ–յամբ 1991–ին Բ. Ն. *Ելցինի* հետ եղել է ԼՂՀ–ում, նրա միջնորդությամբ ՀՀ, Ադրբեջանի Հանրապետության և ԼՂՀ ներկայացուցիչ–ների միջև բանակցություններ են կայացել և ընդունվել է կոմյունիկե: Վերջին շրջա–նում ղարաբաղյան խնդրի կարգավորման հարցում վարում է խուսափող. քաղ–յուն:

ՆԱԶԱՐԲԵԿ (Նազարբեկյան) Ավետիս Վարդանի, **Լեռնենց** (1866–1939), հաս–քաղ. գործիչ, հրապարակախոս, գրող: ՍԴՀԿ հիմնադիրներից, 1890–ից՝ նա–խագահ: Մարո ***Նազարբեկի*** ամուսինը: Կուս–յան պառակտումից (1896) հետո գլխավորել է ինչկյանների ձախ՝ սոց. թևը: 1887–ին Մոնպելիեում (Ֆրանսիա) հիմնադրել է ***«Հնչակ»*** թերթը: Մասնակցել է ՀՕԿ–ի աշխ–ներին: 1934–ից՝ ԽՍՀՄ–ում:

ՆԱԶԱՐԲԵԿ (Նազարբեկյան) Մարո Հով–հաննեսի (օրիորդ. ազգանունը՝ Վար–դանյան, 1864–1941), հաս–քաղ. գործիչ: Ավետիս ***Նազարբեկի*** կինը: 1887–ին մասնակցել է «Հնչակ» թերթի և ՍԴՀԿ հիմնադրմանը: 1904–05–ին գործել է Ս. Պետերբուրգում, 1905–10–ին՝ Թիֆլիսում: 1910–ին ձերբակալվել է (Մետեխի բանտ), 1912–ին աքսորվել Սիբիր: 1917–ի Փետր. հեղ–յունից հետո վերադարձել է Պետ–րոգրադ: 1918–ից՝ Թիֆլիսում:

ՆԱԶԱՐԲԵԿՈՎ (Նազարբեկյան) Թովմաս Հովհաննեսի (1855–1931), ռազմ. գործիչ, գեն–լեյտ. (1919, գեն–մայոր՝ 1915–ից): Մասնակցել է 1877–78–ի ռուս–թուրք., 1904–05–ի ռուս–ճապոն. պատերազմնե–րին: ԱՀՊ–ի ժամանակ կռվել է Կովկաս–յան ռազմաճակատում. 1914–ին՝ բրիգադի, 1915–ին՝ Կովկասյան հրաձգ. 2–րդ դիվի–զիայի, 1917–ին՝ Հայկ. առանձին բանակ. կորպուսի հրամ.: 1918–ի մայիսին նրա ընդհ. հրամանատարությամբ հայկ. զոր–քերն ու կամավորները Բաշ Ապարանի և Սարդարապատի ճակատամարտերում հաղթել, Ղարաքիլիսայում կասեցրել են թուրք. զորքերի առաջխաղացումը: 1919–ի մարտից եղել է ՀՀ ռազմ. խորհրդի նախագահ և զորահրամ. (սպարապետ): Հայաստանում խորհրդ. իշխանություն հաստատվելուց հետո աքսորվել է (1921–ին) Ռյազան (ՌԽՖՍՀ), ազատվելուց հե–տո ապրել է Թիֆլիսում:

ՆԱԶԱՐԵԹ, ք. ստորին Գալիլեայում (Պա–ղեստին), Հիսուսի ծնողների՝ Մարիամի և Հովսեփի ծննդավայրը: Հիսուսը մեծացել է Ն–ում, բայց գործել է հիմնականում Կավառնայում և այլուր:

ՆԱԶԱՐԵԹՅԱՆ Էդուարդ Եղիշի (ծ. 1944), թերապևտ: Բժշկ. գիտ. դ–ր (1985), պրոֆ. (1988): 1997–2004–ին՝ Պարբեր. հիվանդության հանրապետ. կենտրոնի, 2013–ից՝ Քանաքեռ–Զեյթուն ԲԿ կլինիկա–յի ղեկ.: Աշխ–ները վերաբերում են սրտա–բանության, ստամոքսաղիքաբանության, նեֆրոլոգիայի, ռևմատոլոգիայի, պար–բեր. հիվանդության, ներզատաբանութ–յան խնդիրներին: ՀՀ ԱՆ և Հայկ. բանակի գլխ. թերապևտ (1997–2001):

Տեղեկատվության միջազգ. ակադ–ի (1998), ՌԲՏԳԱ (1999) անդամ:

ՆԱԶԱՐԵԹՅԱՆ Խաչիկ Հակոբի (1931–2002), դերասան: ՀՀ վաստ. արտիստ (1965): Հայրենադարձել է 1946–ին Պլով–դիվից: 1977–ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասան: Նկարահան–վել է կինոյում («Պատվի համար», 1956, «Նվագախմբի տղաները», 1960, «Վե–րադարձ», 1972, «Շնչառություն», 1988, բոլորը՝ Հայֆիլմ, ևն):

ՊՀԹ–ների համամիութ. փառատոնի 1–ին (1958, Սոսկվա), ԽՍՀՄ Պետ. (1981) մրց–ներ:

ՆԱԶԱՐԵԹՅԱՆ Կոստանդին Լևոնի (1921–2010), դատաբժիշկ, թունաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1967), պրոֆ. (1968): Միհրան ***Նազարեթյանի*** հայրը: Թունաքիմիկատների, պոլիմերների ու պլաստմասսաների հիգիենայի և Թունաբանության ՀամԳՀԻ հայկ. մասնաճյուղի տնօրեն (1979–91): Ուսումնասիրել է գրանոզանով կենցաղ. թունավորումները, նկարագրել դրանց կլինիկաախտաբան. պատկերը, առաջարկել բուժման հատուկ եղանակ և կանխարգելման միջոցներ:

ՆԱԶԱՐԵԹՅԱՆ Հակոբ Պողոսի (ծ. 1948), փիլ., հոգեբան: Փիլ. գիտ. դ–ր (1990), պրոֆ. (1996): ՌԲՆԳԱ անդամ (1998): Աշխ–ները վերաբերում են մշակութ. մարդաբանությանը, պատմ. և քաղ. հոգեբ–յանը («Ինտելեկտը տիեզերքում. ակունքները, ձևավորումը, հեռանկարները», 1991, «Ագրեսիա, բարոյականություն և համաշխարհային մշակույթի զարգացման ճգնաժամերը», 1996, երկուսն էլ՝ ռուս.):

ՆԱԶԱՐԵԹՅԱՆ Հմայակ Մարգարի (1889–1937), կուս. և պետ. գործիչ, լրագրող: 1924–30–ին՝ ՀամԿ(բ)Կ Անդրկովկասի քարտուղար, ԿՎՀ նախագահ, Անդրֆեդերացիայի ԲԳՏ ժողկոմ, ժողկոմխորհի նախագահի տեղակալ: 1931–1937–ին՝ ԽՍՀՄ կենտգործկոմի անդամ:

ՆԱԶԱՐԵԹՅԱՆ Միհրան Կոստանդինի (ծ. 1944), արյունաբան, առողջապ–յան կազմակերպիչ: Բժշկ. գիտ. դ–ր (2001): Կոստանդին ***Նազարեթյանի*** որդին: ՀՀ ԱՆ նախարար (1990–91): Աշխ–ները վերաբերում են արյան հիվանդությունների ախտորոշմանը, լեյկոզների և երկաթաբավարար. սակավարյունության համաճարակաբանությանը, կանխարգելման մեթոդներին ևն: Մշակել և ներդրել է «անվտանգ արյան» հայեցակարգը: Երևանի Արյունաբանության և արյան փոխներարկման ԳՀԻ–ում ստեղծել է հեմոֆիլիայի կենտրոն (ՀՀ–ում առաջինը):

Վատիկանի Սբ Գևորգ Մեծ շքանշան (1991):

ՆԱԶԱՐԵԹՅԱՆ Ռուբեն Արտավազդի (1925–1991), դեղաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1971), պրոֆ. (1972): Աշխ–ները վերաբերում են նոր դեղանյութերի հայտնաբերման, արդ–յան մեջ աշխատողների մասնագիտ. թունավորումների (քիմ. նյութերով) կանխարգելմանն ու բուժման հարցերին:

ՆԱԶԱՐԵԹՅԱՆ Սերգեյ Նորայրի (ծ. 1948), երկրաֆիզիկոս: Երկրր–ինքք. գիտ. դ–ր (1988), պրոֆ. (1999): Մշակել է խորքային բեկվածքների անջատման եղանակ, զարգացրել ուժեղ երկրաշարժերի առաջացման բեկվածք. հանգույցների տեսությունը, մասնակցել է Հայաստանի և Կովկասի առանձին շրջանների սեյսմիկ վտանգների գնահատման քարտեզների կազմմանը:

Էկոլոգիայի և կենսագործունեության անվտանգության միջազգ. (1997), ՌԴ Բնական (2000) ԳԱ–ների, ՀՃԱ (2002) անդամ:

ՌԴԱ Մ. Վ. Լոմոնոսովի անվ. մեդալ (2000):

ՆԱԶԱՐՅԱՆ Ավետիք Խաչատուրի (ծ. 1931), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1988), պրոֆ. (1989): Աշխ–ները վերաբերում են ՀՀ արդ–յան տեխնիկատնտ. հեռանկարների զարգացման խնդիրներին:

ՆԱԶԱՐՅԱՆ Արամ Ղազարի (ծ. 1948), նկարիչ: Հեղինակ է ցայտուն ինքնատիպ գունազգացողությամբ գործերի («Կինը հովիարով», «Հուշկապարիկ», երկուսն էլ՝ 1999, «Թատրոն», 2000, «Կնոջ դիմանկար», 2001, «Անվերնագիր», 2002, ևն):

ՆԱԶԱՐՅԱՆ Արման Հրանտի (1928–2007), լեզվաբան–ռոմանագետ, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ–ր (1980), պրոֆ. (1984): Հեղինակ է «Արդի ֆրանսերենի դարձվածաբանություն» (ռուս., 1987), «Ֆրանսիական առածներ և ասացվածքներ» (1994), «Ֆրանսերենի համեմատությունների դարձվածքները» (1997) աշխ–ների: Կազմել է «Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն–ռուսերեն–հայերեն ուսումնական» (1993), «Անգլիական առածների և ասացվածքների պատկերազարդ» (1999), «Անգլերեն դարձվածքների ուսումնական համառոտ» (2000) բառարաններ:

ՆԱԶԱՐՅԱՆ Արմեն Լյուդվիգի (ծ. 1947), ըմբիշ: Հունա–հռոմ. ոճի ըմբշամարտի Հայաստանի և Բուլղարիայի բազմակի, Եվրոպայի վեցակի (1994, 1995, 1998, 1999, 2002, 2003), աշխարհի եռակի (2002, 2003, 2005), օլիմպ. խաղերի կրկնակի (1995, 2000) չեմպիոն: Բուլղարիայի հունա–հռոմ. ըմբշամարտի հավաքականի գլխ. մարզիչ (2012): ՀՀ Երախտագիտ–յան մեդալ (2015):

ՆԱԶԱՐՅԱՆ Ենոք Ստեփանի (1868–1928), նկարիչ: 1906–27–ին Ալեքսանդրապոլում ղեկավարել է նկարչ. ստուդիա: Հեղինակ է դիմանկարների (Պ. Ադամյանի, Ա. Արմենյանի, Հ. Աբելյանի, Մ. Մանվելյանի, Ատրպետի և ուր.), որոնք առանձնանում են բնութագր. գեղ. արտահայտչամիջոցների ներդաշնակությամբ:

ՆԱԶԱՐՅԱՆ Էռնեստ Աղաջանի (ծ. 1943), մեքենաշինության բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1995), պրոֆ. (1996): ԵՊՀ ֆիզիկայի ֆակ–ի թաղանթների ձևագոյացման ԳՀ լաբորատորիայի գիտ. ղեկ.: Աշխ–ները վերաբերում են առանցքահամաչափ թաղանթների ձևախախտման մշակման տես. և տեխնոլոգ. հիմունքներին:

ՆԱԶԱՐՅԱՆ Խաչիկ Ենոքի (1926–2007), աշխարհագետ–երկրաձևաբան: Աշխարհագր. գիտ. դ–ր (2000), պրոֆ. (1996): Աշխ–ները վերաբերում են Հայկ. լ–աշխարհի ռելիեֆի ձևածագումնաբան. տիպերի վերլուծությանը, ֆիզ. աշխարհագր. շրջանացման, սելավաբեր երևույթների, հնէաաշխարհագրության, բնօգտագործման ու բնապահպանության հարցերին: Հետազոտել է ՀՀ սելավ. հոսքերը (մոտ 400), կազմել ռելիեֆի ձևածագումնաբան., սելավների ձևավորման համալիր խոշորամասշտաբ քարտեզներ:

ՆԱԶԱՐՅԱՆ Կարեն Բաբկենի (ծ. 1947), կենսաֆիզիկոս: Կենսբ. գիտ. դ–ր (1993), պրոֆ. (1994): ԵՀԽ հայաստանյան կլոր սեղանի գրասենյակի գործադիր տնօրեն (1997–ից): Աշխ–ները վերաբերում են գլխուղեղի նյարդաառանձնահատուկ սպիտակուցների ֆիզքիմ. և կենսբ. հատկությունների, գլիկոլիտիկ ֆերմենտների վերմոլ. կառուցվածքի և տրանսկրիպցիայի մակարդակով կարգավորման առանձնահատկություններին, կենսընթացների համակարգչ. մոդելավորման մեխանիզմներին:

ՆԱԶԱՐՅԱՆ Նազարեթ Հայկազի (ծ. 1957), ճարտարագետ–մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1996), պրոֆ. (2003): Զարգացրել է բարդ համակարգերի էկոտեղեկագիտ. տեսությունը և դրա հիման վրա առաջարկել երկրաֆիզ. մոնիթորինգի համակարգերի կառուցման խնդիրների լուծման նոր մոտեցում, հեռավոր ռադիոչափումների տվյալների վերականգնման դիֆերենցիալ մոտարկման ալգորիթմ:

ՆԱԶԱՐՅԱՆ Շուշանիկ Լևոնի (1913–2006), բանասեր, գրականագետ, մատենագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1972): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1984): Հեղինակ է «Հրաչյա Քոչար» (1962), «Պետրոս Ղափանցի» (1969), ««Կռունկ» երգը և նրա պատմությունը» (1977) աշխ–ների: Ն–ի աշխատասիրությամբ հրատարակվել են Նաղաշ Հովնաթանի (1951), Պաղտասար Դպիրի (1958, երկուսն էլ՝ Ասատուր ***Մնացականյանի*** հետ), Հովհաննես Կարնեցու (1962), Պետրոս Ղափանցու (1990) բանաստեղծությունները:

ՆԱԶԱՐՅԱՆ Սարգիս (Սերյոժա) Միհրանի (ծ. 1930), ճարտ.: Համահեղինակ է Երևանի 1995–2010–ի գլխ. հատակագծի հայեցակարգի, Երևանի կենտրոնի 1965–66–ի և մի քանի միկրոշրջանների մանրամասն հատակագծման նախագծերի, կանաչապատման հեռանկար. հատակագծի (1973), Սպիտակ ք–ի 1990–2010–ի գլխ. հատակագծի ճշգրտման (1997):

ՀԽՍՀ Պետ. մրց. (1977):

ՆԱԶԱՐՅԱՆ (**Նազարյանց**) Ստեփանոս Եսայու (1812–1879), հրապարակախոս, լուսավորիչ, մանկավարժ, փիլ., գրականագետ: Փիլ–յան թեկնածու (1840), գիտ. դ–ր (1849): 1850–79–ին՝ ***Լազարյան ճեմարանի*** պրոֆ., 1858–64–ին՝ ***«Հիսիսապայլ»*** ամսագրի հիմնադիր–խմբ.: Պաշտպանել է հայ ժողղ–ի ազատագրության գաղափարը, արծարծել ազգ. վերամիավորման հարցեր: Առաջադրել է թուրք. բռնակալության դեմ պայքարի և ինքնուրույն պետության ստեղծման գաղափարը: Կարևորել է գրաքննադատությունը: Հեղինակ է «Յաղագս փորձնական հոգեբանութեան ճառ» (1851), «Առաջին հոգեղեն կերակուր հայազգի երեխաների համար» (1853), «Հանդէս նոր հայախօսութեան» (մաս 1–2, 1857), «Պատմութիւն պիղագօգիկայի եւ երկու հատ ճառ» (1870) և այլ աշխ–ների, «Նամականի»–ի (հրտ.՝ 1969):

ՆԱԶԱՐՅԱՆ Սուրեն Բենիամինի (1929–1999), քանդ.: ՀՀ ժող. նկարիչ (1990): 1992–ից՝ Լոս Անջելեսում: Գործերին բնորոշ են մոնումենտալ ընդհանրացումները, դինամիզմը, քաղաքաց. պաթոսը (Սբ Էջմիածնի Վեհարանի գահասենյակի քանդակազարդ ձևավորումները, 1964, Ֆրիկի արձանը, 1967, Մտնդ–ի առջև, Հայկ Բժշկյանի, 1977, Երևան, Արտեմ Միկոյանի, 1982, Սանահին, «Ավետում» հարթաքանդակը, 1986, Էջմիածին, ևն):

ՆԱԶԱՐՅԱՆ Վլադիմիր Ռուբենի (1932–2002), իրավաբան: Իրավաբ. գիտ. դ–ր (1988): 1988–90–ին՝ ՀՀ դատախազ: Մասնակցել է ՀՀ Սահմանադրության, քաղաքաց. և քաղաքաց. դատավար. օրենսգրքերի նախագծերի կազմման աշխ–ներին:

ՆԱԶԱՐՅԱՆ Տիգրան Հակոբջանի (1858–1926), խմբ., հրտ., հաս. գործիչ: Թիֆլիսում հիմնադրել է «Արոր» տպարանը (1883–1893), 1915–ին՝ որբանոցում ապաստարան, մանկապարտեզ: ***«Աղբիւր»*** (1883–1918), ***«Տարազ»*** (1890–1919), «Կովկասի առաւօտ» (1907–08) և այլ պարբ–ների հիմնադիր–խմբ.: 1919–ին մեկնել է Եվրոպա, 1922–ին Լայպցիգում հրատարակել է «Թիքա»

գր. ալմանախը: 1925-ին վերադարձել է հայրենիք, կազմակերպել է Ղարաբաղի օգնության կոմիտե: Հեղինակ է «Շրպատրդ քօլատ կտրի» (1889), «Արոզա» (1913) պիեսների, «Տօն ու ձոն» (1908), «Խօսք եւ գործ» (1914) ակնարկների, հրապարակախոս. հոդվածների ժող-ների:

ՆԱԶԱՐՅԱՆՑ Հրանտ (1884–1963), բանաստեղծ: Գրել է հայ., իտալ., ֆրանս.: Հեղինակ է «Խաչված երազներ» բանաստեղծությունների ժող-ի: Հայ. է թարգմանել Ֆ. *Մարինետտիի* մի շարք բանաստեղծություններ, գրել «Ֆ. Թ. Մարինետթիին եւ ապագայապաշտութիւնը» (1910) աշխ-ը, որը ֆուտուրիզմին նվիրված առաջին երկերից է համաշխ. գրկ-յան պատմության մեջ:

ՆԱԶԱՐՈՎ Արմենակ Գևորգի (1908–1983), երկրաշարժագետ: ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1960, թղթ. անդամ՝ 1945-ից): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1958): ՀԽՍՀ ԳԱ Երկրի մասին գիտ-յունների բաժանմունքի ակադ. քարտուղար (1982), ԳԱ երկրաֆիզիկայի և սեյսմաբանության ինստ-ի (Գյումրի) տնօրեն (1949–53): Աշխ-ները վերաբերում են շին. մեխանիկայի, երկրաշարժակայուն կառույցների, ճարտարագիտ. երկրաշարժագիտ-յան, կիրառ. մեխանիկայի, երկրաֆիզիկայի հարցերին: ԽՍՀՄ ԳԱ նախագահությանն առընթեր երկրաշարժագիտ., երկրաշարժակայուն շին-յան միջգերատեսչ. խորհրդի Կովկասի բաժնի նախագահ (1979–83-ին):

ՀԽՍՀ Պետ. մրց. (1974), Լենինի շքանշան (1971):

ՆԱԶԱՐՈՎ Գեորգի Նիկոլայի (1908–1985), ավիակոնստրուկտոր: Գլխավորել է մեծ հեռահարության գերձայն. հրթիռների մշակման աշխ-ները: Եղել է Ավիացիոն տեխնիկայի չափորոշման ՓԿԲ-ի գլխ. կոնստրուկտոր (1958–75): Ն-ի ղեկավարությամբ մշակվել է տիտանի համաձուլվածքներով պատրաստված թռչող սարքի արտադրակարգը և ստեղծվել կառուցվածքը: Ղեկավարել է խոշոր ռմբակոծիչ ինքնաթիռների մշակման, կառուցման, փորձարկման և ներդրման աշխ-ները: Լենինյան մրց. (1957):

ՆԱԶԱՐՈՎ Իվան Նիկոլաևիչ (1906–1957), ռուս քիմիկոս-օրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1953, թղթ. անդամ՝ 1946-ից): Աշխ-ները վերաբերում են ացետիլենի և նրա ածանցյալների (այդ թվում՝ վինիլացետիլենի) քիմիային: Սինթեզել է մի շարք ֆիզիոլոգիապես ակտիվ նյութեր (այդ թվում՝ պրոմեդոլ, ստերոիդային հորմոններ): ԽՍՀՄ Պետ. մրց. (1942, 1946):

ՆԱԶԱՐՈՎ Լեմիկ Հունանի (1933–1998), պրոկտոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (1974), պրոֆ. (1981): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996): Պրոկտոլոգիայի ԳՀԻ հիմնադիր-տնօրեն (1985–98): Աշխ-ները վերաբերում են ընդհ. պրոկտոլոգիայի, հաստ աղիի ուռուցքների ֆունկցիոնալ ու բորբոք. հիվանդությունների վիրահատ. բուժման հարցերին:

ՆԱԶԱՐՈՎ Կոստանդին Ալեքսանդրի (1923–1996), հրետանու գեն-մայոր (1970): ԽՄ հերոս (1945): Հերոսի կոչման արժանացել է 1944-ի հոկտ-ին Նարև գետի (Վարշավայից հս) արմ. ափին հենակետ գրավելու համար: Զորացրվել է 1987-ին:

ԽՍՀՄ Կարմիր աստղի (1943), ՀՄՊ 1-ին (1945), 2-րդ (1944) աստիճանների, «ԽՍՀՄ ԶՈՒ-ում Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» (1975), «Պատվո նշան» (1969) շքանշաններ, նաև մեդալներ:

ՆԱԶԱՐՈՎ Յուրի Վլադիմիրովիչ (ծ. 1937), ռուս. կինոդերասան: ՌԴ ժող. արտիստ (2005): Նկարահանվել է «Անդրեյ Ռուբլյով», «Դաուրիա», «Հայելի», «Արի ամուսնանանք», «Փոքրիկ Վերան», «Ապուշի երազանքները», «Շոշափելով» և այլ կինոնկարներում:

ՆԱԶԱՐՈՎԱ Էսթելա Աշոտի (ծ. 1936), բուսաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1991): Աշխ-ները վերաբերում են Այսրկովկասի ֆլորայում հազարի կորիզաբանությանը, մշակաբույսերի վայրի ազգակիցների բջջաբան. հետազոտությանը, կենսաբազմազանությանը և բուս. գենետիկ. պաշարներին: Մասնակցել է «Հայաստանի ֆլորան» (ռուս., հ. 9, 10) աշխ-յան հրատարակմանը:

ՆԱԶԵԼԻ, լ-գագաթ Գեղամա լ-վահանի կատար. մասում՝ Աժդահակ լ-գագաթից հվ-արլ.՝ Գեղարքունիքի մարզում: Բարձր.՝ 3312 *մ*: Գագաթին կա ոչ մեծ խառնարան՝ ճեղքված էրոզային ձորակով: Կազմված է հրաբխ. ապարներից: Լանդշաֆտը լ-մարզագետնային է:

ՆԱԶԵՆԻԿ, **Նազինիկ**, II դ-ի երգչուհի, պարուհի (վարձակ): Ըստ Մովսես Խորենացու՝ Սյունյաց Բակուր նահապետի հարճը: Ն-ին է նվիրված Դանիել *Վարուժանի* «Հարճը» պոեմը: Երևանում 2001-ին կազմակերպվել է «Նազենիկ» մսթախաղի միջազգ. թատեր. փառատոնը:

ՆԱԶԻԿ, անհոսք քաղցրահամ լիճ Հայկ. լ-աշխարհում՝ Վանա լճի ավազանում՝ մոտ 2000 *մ* բարձր-յան վրա: Առաջացել է Սիփանի և Նեմրութի հրաբխ. լավաների արգելափակումից: Երկ.՝ 11 *կմ*, լայն.՝ 6,5 *կմ*, մակերեսը՝ 40 *կմ*^{2}, ավազանը՝ 800 *կմ*^{2}: Մնումը՝ հալոցք., անձրևային և աղբյուրներից:

ՆԱԶԻԿՅԱՆ Գրիգոր Ադամի (1909–1982), մանկավարժ, խմբ.: Մանկավարժ. գիտ. դ-ր (1974), պրոֆ. (1976): Աթենքում «Ժողովուրդի ձայն» (1930–31) և «Նոր շարժում» (1931–34) թերթերի խմբ.: 1944–50-ին՝ Հայաստանի ժողկրթության թանգարանի տնօրեն: Հեղինակ է հայկ. դպրոցի պատմությանը վերաբերող աշխ-ների:

ՆԱԶԻՄ ՀԻԿՄԵԹ ՌԱՆ (1902–1963), թուրք գրող, հաս. գործիչ: 17 տարի անցկացրել է թուրք. բանտերում: 1951-ից՝ ԽՍՀՄ-ում: Հեղինակ է «Արև ըմպողների երգը» (1928), «835 տող» (1929), «Ձայնը կորցրած քաղաքը» (1931) բանաստեղծությունների ժող-ների, «Մարդկային համայնապատկեր» (1941–61, հրտ. թուրք.՝ 1966–67) հերոսապատումի, նաև «Մոռացված մարդ» (1935), «Տարօրինակը» (1955), «Եղել է արդյոք Իվան Իվանովիչը» (1956) պիեսների, կինոսցենարների: Հայ. հրատարակվել են «Զոյա» (1951) պոեմը, «Բանաստեղծություններ» (1953) ժող-ը:

Խաղաղության միջազգ. մրց. (1950):

ՆԱԶԻՆՅԱՆ Ավետ Հենզելի (ծ. 1967), նյարդախտաբան, նյարդաֆիզիոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (2003), պրոֆ. (2005): Աշխ-ները վերաբերում են գլխուղեղի և ողնուղեղի անոթ. հիվանդությունների տարբերակիչ ախտորոշմանը, գլխուղեղի իշեմիկ հիվանդության ժամանակակից հարկլինիկ. հետազոտման եղանակներին: ՌԲՍԳԱ և Կենսագործունեության անվտանգության և էկոլոգիայի միջազգ. ակադ-ի անդամ:

ՆԱԶԻՆՅԱՆ Արտաշես Մկրտչի (1924–1999), բանագետ: Բանասիր. գիտ. թեկնածու (1953): Հեղինակ է «Սովետահայ գրականությունը և ժողովրդական բանահյուսությունը» (1954), «Սովետահայ ժողովրդական բանահյուսությունը» (1957) աշխ-ների: Ն-ի խմբագրությամբ սկսել են հրատարակվել «Հայ ժողովրդական հեքիաթներ» (հ. 1–17, 1959–2012) մատենաշարը, «Ծաղկեփունջ» (հայկ. ժող. առակներ, զրույցներ, առածներ, խաղիկներ, հանելուկներ, 1960), «Հայ ժողովրդական առակներ» (2008) ժող-ները:

ՆԱԶԻՐ ԱԿԲԱՐԱԲԱԴԻ Վալի Սուհամմադ (մոտ 1740–1830), ինդիկ բանաստեղծ: Գրել է ուրդուով: Հեղինակ է ժող. կենցաղն ու բարքերը պատկերող «Անձրևային եղանակի ցնծությունը», «Չքավորություն», «Ցնցված քաղաքը» պոեմների:

ՆԱԶՈՎՐԵՑԻՆԵՐ, **Նազովրեցիք**, **Նազարացիք**, *Հիսուս Քրիստոսին* և նրա հետևորդներին տրված անվանումներից՝ *Նոր կտակարանում* և մեկնություններում (Նազարեթ ք-ի անունից, որտեղ անցել է Քրիստոսի մանկությունն ու պատանեկությունը):

ՆԱԶՊԱՐ, հայկ. ժող. պարերի հիման վրա բեմադրված մենապար: 1920-ական թթ-ին Թիֆլիսում բեմադրել է Սրբուհի *Լիսիցյանը*, կատարել է նրա դուստրը՝ Նազելին: Համերգին ներկա Հովհաննես *Թումանյանի* առաջարկով պարը Նազելիի պատվին անվանել են «Ն.»:

ՆԱԶՎԱՆՈՎ Միխայիլ Միխայլովիչ (1914–1964), ռուս. դերասան: ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1949): 1931-ից՝ ՄԳԱԹ-ի և այլ թատրոնների դերասան (Կասիո՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», Օրլոնսկի՝ «Աննա Կարենինա»՝ ըստ Լ. Ն. Տոլստոյի, ևն): Նկարահանվել է կինոյում («Սպասիր ինձ», «Իվան Ահեղ», 1–2 սերիա), «Հանդիպում Էլբայի վրա», «Համլետ» ևն), նկարահանել «Հյուրանոցի տիրուհին» (1956, ըստ Կ. Գոլդոնիի, Ռիպաֆրատայի դերում՝ Ն.):

ԽՍՀՄ Պետ. մրց. (1948, 1949, 1950):

ՆԱԶՎԱՐԴ, **լեռնավարդ**, հավամրգազգիների ընտանիքի մրտվարդերի ցեղի գեղազարդիչ մանր տերևներով թփեր:

ՆԱԶՐԱՆ, ք. (1967-ից), ՌԴ Ինգուշեթիայի համանուն շրջանի վարչ. կենտրոնը: Երկթղ. հանգույց է: Բն.՝ 110 հզ. (2015): Մինչև 2000-ը եղել է Ինգուշեթիայի վարչ. կենտրոնը: Հիշատակվում է 1781-ից:

ՆԱԹԱՆԱԵԼՅԱՆՆԵՐ, իշխան. տոհմ Կիլիկյան Հայաստանում: Հիշատակվում են որպես Ասկուռասի և Բարձրբերդի տերեր: 1152-ի *Սամեպրիայի ճակատամարտում* բյուզ. զորքերին աջակցելու համար *Թորոս Բ*-ն ձերբակալել է Վասիլ ու Տիգրան Ն-ին, ապա ազատել՝ փրկագին ու պատանդներ տալու և կենտր. իշխանությանն առմիշտ ենթարկվելու պայմանով: XII դ-ի վերջին նրանց կալվածքներին տիրել են *Հեթումյանները*:

ՆԱԹԱՆՆ (Nathans) Դանիել (1928–1999), ամերիկացի մանրէաբան: Ջոնս Հոփկինսի համալսարանի նախագահ (1995–96): Ուռուցքածին վիրուսներից մեկի գենոմի կառուցվածքի հետազոտման (քարտեզագրման) համար օգտագործել է ռեստրիկտազներ: Ն-ի աշխ-ները նպաստել են գենետիկ. ճարտարագիտ-յան մեթոդների զարգացմանը: Նոբելյան մրց. (1978, Վ. *Արբերի* և Հ. *Սմիթի* հետ):

ՆԱԹԱՆՍՈՆ Գեորգի Գրիգորևիչ (ծ. 1921), ռուս. ռեժ.: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1981): ՌԴ ժող. արտիստ (1994): Նկարահանել է «Աղմկոտ օր» (1961, Ա. Էֆրոսի հետ), «Ավազ քույրը» (1967), «Դարձյալ սիրո մասին» (1968), «Կատաղած ավտորուս» (1991), «Կեցցե՛ թագուհին, վիվատ» (2009, վավերագր.) և այլ ֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1977):

ՆԱԻՐԻ (աքքադ.՝ նարու – «գետ» բառից), Ասորեստանից և Հս. Միջագետքից հս տարածվող «երկրների» ընդհանր. անվանումն ասորեստան. արձանագրություններում: «Նաիրի երկրներ» արտահայտությունն առաջին անգամ հանդիպում է Ասորեստանի Թուկուլտի–Նինուտրա I թագավորի (1243–1221) արձանագրություններում: Մ. թ. ա. XIII–X դդ–ի սկզբնաղբյուրներում անվանումը տարածվել է հիմնականում Վանա լճի («Նաիրի երկրների ծով») ավազանում, Տիգրիսի ու Եփրատի վերին հոսանքների և նրանց ակունքների շրջաններում ընկած «երկրների» վրա: Մ. թ. ա. IX դ–ում Ն–ի երկրները միավորվել են Վանի թագավորության հետ (Ուրարտու), որի միապետը կրել է նաև «Նաիրի երկրների թագավոր» տիտղոսը: Ըստ ասորեստան. արձանագրությունների՝ «Ն.» է կոչվել Վանա լճից ու Հայկ. Տավրոսից հվ տարածվող «երկիրը», որն իր կենտրոնի անունով հաճախ կոչվել է նաև «Խուբուշկիա քաղաքի երկիր»: Ասորեստանի կործանումից հետո (մ. թ. ա. VII դ–ի վերջ) «Նաիրի–Խուրուշկիա» անվանումը չի գործածվել: Այնուհետև այդ երկիրը եղել է ***Մեծ Հայքի*** հվ. նահգ–ներից:

«ՆԱԻՐԻ», ընդհ. նշանակության թվանշան. հաշվող. մեքենաների (ԹՀՄ) ընտանիք: Կառավարվում էր միկրոծրագրման սկզբունքով և աշխատում ավտոմատ ծրագրավորման համակարգում: Մշակվել է ԵրՄՄ ԳՀԻ–ում: «Ն–4» ԹՀՄ ցուցադրվել է Լոս Անջելեսի (1977), Ալժիրի (1979), Զագրեբի (1979) ցուցահանդեսներում:

«ՆԱԻՐԻ», հրտչ–յուն, ստեղծվել է 1976–ին Երևանում (1976–88–ին՝ «Սովետական գրող», 1988–91–ին՝ «Խորհրդային գրող»): Առանձնացել է ***«Հայաստան»*** հրտչ–յունից: Հրատարակել է «Հայ դասականների գրադարան», «Ռուս դասականների գրադարան», «Հայ մատենագիրներ», «Հայ քնարերգություն», «Արկածային գրադարան» և այլ մատենաշարեր, խորհրդահայ և սփյուռքահայ անվանի գրողների երկեր, մանկ., թարգմ., գիտ., ուս. և մշակույթի վերաբերյալ գրկ.,նաև հայ գրկ. օտար լեզուներով: Տնօրեններ՝ Վիկտոր Բալայան, Գևորգ Հայրյան, Հարություն Ֆելեքյան, Հրաչյա Թամրազյան, Սասունիկ Թորոսյան, Վրեժ Իսրայելյան:

«ՆԱԻՐԻ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ, ոչ պետ. բուժհիմնարկ Երևանում (2002–ից): Հիմնովին վերակառուցված և նորագույն սարքավորումներով հագեցված գործում է 2004–ից: Ունի ՄՌԾ–ի, ռենտգեն., անդրաձայն., ընդերադիտ., ֆունկցիոնալ ախտորոշման, նաև լաբորատոր և գործիք. հետազոտությունների բաժանմունքներ: «Սիմենս» ֆիրմայի նորագույն «Somatom Sensation Cardiac 64» համակարգչ. շերտագրիչն ապահովում է ախտորոշման բացառիկ ճշգրտություն, բարձրորակ պատկեր և հետազոտվողի առլգն անվտանգություն, առաջին անգամ կատարվում է ոչ ներթափանցող ՀԾ–անթագրություն (ՀԾ–անգիոգրաֆիա):

ՆԱԻՐԻ ԺԻՐԱՅՐ (Թոսունյան, 1929–2013), հաս. գործիչ, խմբ.: 1987–90–ին՝ ՍԴՀԿ Լիբանանի կեդրն. վարչության ատենապետ, 1992–95–ին՝ «Արարատ» օրաթերթի, 1995–ից՝ «Նայիրի» շաբաթաթերթի խմբ.:

«ՆԱԻՐԻ Վ. ԿԱԼԻՆԻՆԳՐԱԴԵ» («Наири в Калининграде» – «Նաիրին Կալինինգրադում»), ազգ., մշակութ., տեղեկատվ. ամսաթերթ (2003–ից, Կալինինգրադ՝ հայ. և ռուս.): «Հայկական գիտատեղեկատվական, մշակութային կենտրոն» ՀԿ–ի պաշտոնաթերթ: Հիմնադիր–խմբ.՝ Ֆելիքս Գևորգյան:

«ՆԱԻՐԻՏ», ՀՀ–ում արտադրվող քլորոպրեն. կաուչուկների և լատեքսների առևտրային անվանումը: Քլորոպրեն. կաուչուկ է, որից ստացվող ռետինները մաշակայուն են և չայրվող, կայուն են յուղերի, բենզինի, օզոնի, ալկալիների ու նոսր թթուների նկատմամբ: Օգտագործում են ռետինատեխ. իրերի, հաղորդալարերի, կաբելների, սոսինձների արտադր–յան մեջ, քիմ. և գլանող սարքերի երեսպատման համար, լատեքսը՝ որպես սոսնձանյութ: Ն. արտադրվել է Երևանի ***«Նաիրիտ գործարանում»***:

«ՆԱԻՐԻՏ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ, արհեստ. կաուչուկի արտադր–յան ձեռն. ՀՀ–ում: Հիմնադրվել է 1940–ին, թողարկել ***«Նաիրիտ»*** մակնիշի կաուչուկ և մոտ 34 տեսակի քիմ. արտադրանք: 1989–ին փակվել է բնապահպան. նկատառումներով, մասամբ վերագործարկվել 1992–93–ին: 2006–ին ձեռն–յան բաժնետոմսերի 90 %–ը վաճառվել է «Փրոփըրթի Լիմիթեդ» ընկ–յանը: 2008–ին աշխ–ը դադարեցվել է:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, երաժիշտների ընտանիք: **Գևորգ Ն.** (1887–1963), նվագել է ջութակ, քանոն, փողավոր երաժշտ. գործիքներ: 1924–ից Ադիս Աբեբայում հիմնադրել է հայ երեխաներից բաղկացած «Քառասուն մանուկներ» և այլ փող. նվագախմբեր, երգչախմբեր, թատերախումբ: Հեղինակ է եթովպիայի ազգ. օրհներգի (արժանացել է լորդի պատվանվան), երգերի, պիեսների («Հեղափոխականները» ևն, հաբեշ.): Եղբայրը՝ **Հակոբ Ն.** (1901–1979), ջութակահար, խմբավար: Հիմնադրել է նվագախմբեր, երաժշտ. դպրոց, նպաստել եթովպ. ժող. արվ–ի զարգացմանը: 1944–ից Ադիս Աբեբայում ղեկավարել է զինվ. նվագախումբ: Գևորգ և Հակոբ Ն–ների եղբորորդին՝ **Ներսես Ն.** (1915–1977), ջութակահար, դաշնակահար, խմբավար: Հիմնադրել է հայկ. «Սիւրադյան» երգչախումբը, եղել Ադիս Աբեբայի պետ. թատրոնի նվագախմբի դիրիժոր: Հեղինակ է խմբերգերի, երգերի, քայլերգերի:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Ալբերտ Սամիկոնի (ծ. 1940), խմբ., թարգմանիչ: 1987–ից՝ ՀԳՄ «Լիտերատուրնայա Արմենիա» (ռուս.) հանդեսի գլխ. խմբ.: Թարգմանել և առանձին գրքերով ռուս. լույս է ընծայել Վ. Տերյանի, Հ. Թումանյանի, Հ. Հովհաննիսյանի, Մ. Մեծարենցի, Դ. Վարուժանի, Գ. Էմինի, Ս. Կապուտիկյանի, Հ. Սահյանի և ուր. գործերից: Թարգմանում է նաև ուզբ–ից և լատիշ–ից: Հեղինակ է «Կիսաձայն» (ռուս., 1963) բանաստեղծությունների ժող–ի:

ՀԳՄ և ՀԱԵ «Կանթեղ» (2008) գր. մրց.:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Արամ Բագրատի (1908–1987), քիմիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1943), պրոֆ. (1947): ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1963, թղթ. անդամ՝ 1960–ից): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1971): Աշխ–ները վերաբերում են գազաֆազ ճյուղավորված շղթ. ռեակցիաների կինետիկային, մեխանիզմի և միջանկյալ միացությունների ուսումնասիրմանը: ԷՊՌ եղանակով ջրածնի նոսրացված բոցում առաջինն է հայտնաբերել թթվածնի ատոմներ, OH և HO_2 ռադիկալներ: Ածխաջրածինների ջերմա– և լուսաքիմ. օքսիդացման շնորհիվ մշակել է մրջնալդեհիդի ուղղակի ստացման արդ. եղանակ: Առաջարկել է (Ադոլֆ ***Մանթաշյանի*** հետ) ռադիկալների ստացման նոր կինետիկ. եղանակ, որով ալդեհիդների և ածխաջրածինների օքսիդացման, ջրածնի ու ածխածնի մոնօքսիդի դանդաղ օքսիդացման ռեակցիաներում հայտնաբերել է գերօքսիդային ռադիկալներ, ինչպես նաև օրգ. և ջրածնի գերօքսիդների տարասեռ ռադիկալային քայքայման երևույթը: Նյու Յորքի ԳԱ անդամ (1979):

ԽՍՀՄ ԳԱ Դ. Ի. Մենդելեևի անվ. (1953), ՀԽՍՀ Պետ. (1976) մրց–ներ, Լենինի, ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (2), «Պատվո նշան» շքանշաններ:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Արմեն Զոնի (1930–1997), մանրէաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1989), պրոֆ. (1995): Աշխ–ները վերաբերում են պալարաբակտերիաների արդյունավետ մանրէահիմքերի ստացման և կիրառման հարցերին: ՀՀ–ում առաջինն է մշակել սոյայից կաթ, մածուն, յողուրտ ստանալու տեխնոլոգիան:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Արփենիկ Արշակի (1916–1964), նկարչուհի: Դմիտրի ***Նալբանդյանի*** քույրը, Արամ ***Խաչենկյանի*** մայրը: ՀԽՍՀ վաստ. նկարիչ (1956): Հեղինակ է դիմանկարների («Աղջիկը», 1957, «Մերի Զոչարի դիմանկարը», 1960, «Օվսաննա մայրիկը», 1962, ևն), կենցաղ. կտավների («Մտորումների մեջ», 1939, «Աղբյուրի մոտ», 1957, ևն), բնանկարների («Ախթալա», 1943, «Խնձորեսկ», 1962, ևն):

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Գևորգ Մկրտչի (1926–1998), արևելագետ, թարգմանիչ, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ–ր (1973), պրոֆ. (1973): Հեղինակ է «Իրանական լեզուներն ու բարբառները» (1960), «Միջին պարսկերեն (պահլավերեն)» (1962), «Հին պարսկերեն» (1963), «Պարսկերեն լեզվի քերականություն» (1980) աշխ–ների, «Պարսկերեն–հայերեն բառարան» (1987), «Պահլավերեն–հայերեն բառարան» (1994) բառարանների: Ն–ի աշխատասիրությամբ պարսկ. հրատարակվել են Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» (1984) և Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» (1989) երկերը:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Դմիտրի Արշակի (1906–1993), նկարիչ: ՀԽՍՀ (1965), ԽՍՀՄ (1969) ժող. նկարիչ: Արփենիկ ***Նալբանդյանի*** եղբայրը: ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի ակադ. (1953): Սոց. աշխ. հերոս (1976): Հեղինակ է Ա. Իսահակյանի (1940), Ի. Վ. Ստալինի (1945), Հ. Բաղրամյանի (1954), Ա. Խաչատրյանի (1963), Լ. Ի. Բրեժնևի (շարք, 1970–76) դիմանկարների, թեմատիկ կտավների («Վերնատուն», 1976, ևն), բնանկարների («Աշտարակ»: Հին ջրաղաց», 1973, «Արարատյան հովիտ», 1976, ևն), նատյուրմորտների («Վարդեր», 1975, ևն), գրաֆիկ. գործերի:

ԽՍՀՄ Պետ. (1946, 1951), Լենինյան (1982) մրց–ներ, ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Լուիզ Ծիածան (1926–1974), պատմաբան: Ֆրեզնոյի համալսարանում հիմնադրել է հայագիտյան ամբիոն: Աշխ-ները վերաբերում են XIX դ-ի վերջի հայ ազգ-ազատագր. շարժմանը, մշակույթի պատմությանը: Հայագիտ. համազգ. ընկ-յան [1955, կենտրոնը՝ Քեմբրիջ (ԱՄՆ)] անդամ:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Հովհաննես (Իոհաննես) Առաքելի (Ռոմանովիչ, 1871–1942), ջութակահար, մանկավարժ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1937): Պրոֆ. (1908): Երկացանկում՝ հայ, ռուս, եվրոպացի կոմպոզիտորների, նաև սեփ. («Արևելյան կապրիս», «Էտյուդ», «Քայլերգ» ևն) երկեր: Ն–ին են նվիրված Ս. Մ. Լյապունովի ջութակի կոնցերտը, Ա. Սպենդիարյանի ջութակի և դաշնամուրի ռոմանսը, «Կանցոնետը» և այլ գործեր:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Հովսեփ Ներսեսի (ծ.1958), գրականագետ, մատենագետ, թարգմանիչ, հրտ.: 1994–ից՝ ԱՄՆ–ում: 2005–ին Լոս Անջելեսում հիմնադրել է «Հովսեփ և Կարոլին Նալբանդյաններ» հրտչ. ընկ–ը և նույնանուն մատենաշարը: Հեղինակ է «Լոյս» (հ. 1–6, 2000–09) հանրագիտարանի, «Ամերիկահայ գիրքի պատմութիւն: Հայկական բառարաններու համառօտ պատմութիւն» (2011) մատենագիտ. ժող–ի, նաև բառարանի ևն:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Միքայել Ղազարի (1829–1866), գրող, հրապարակախոս, փիլ., գրաքննադատ: 1858–59–ին մասնակցել է *«Հիւսիսափայլ»* ամսագրի ստեղծմանը: 1860–ին որպես պատվիրակ մեկնել է Կալկաթա՝ Նոր Նախիջևանի կրթ. կենտրոններին հնդկահայ վաճառական Մասեհ Բաբաջանի կտակած ժառանգությունն ստանալու: 1862–ի մայիսին վերադարձել է Ռուսաստան, հուլիսի 14–ին ձերբակալվել է՝ Լոնդոնում ռուս հեղ–ների հետ համագործակցելու մեղադրանքով: Մահացել է աքսորում: Ն. իր «Երկու տող» (1861), «Երկրագործութիւնը որպէս ուղիղ ճանապարհ» (1862), «Հեգէլը եւ նորա ժամանակը» (1863) հրապարակախոս. երկերում վերլուծել է ժամանակի ազգ. և հաս. կյանքի երևույթները, անդրադարձել տնտ., քաղ., մշակութ. և փիլ. հարցերի: Կրթության և ուսուցման գործում բացառիկ տեղ է հատկացրել մայրենի լեզվին, պայքարել աշխարհաբարի կայացման համար:

Հայ իրականության մեջ Ն. առաջինն է կարևորել գրկ–յան զարգացման համար քննադատության դերը («Կրիտիկա «Սօս եւ Վարդիթերի»» (հրտ.՝ 1935), հայ ռեալիստ. գրկ–յան հիմնադիրներից է («Մինչեւ խօսք, միւսին հարսն», 1857, «Մեռելահարցուկ», 1859): Առաջինն է հայ. գրկ–յան մեջ գրել ֆելիետոնի և պամֆլետի ժանրերով: Հեղինակ է նաև քնար., ազգ–հայրենասիր. բանաստեղծությունների («Ազատութիւն», 1859, «Մանկութեան օրեր», 1860, «Իտալացի աղջկա երգը», 1861, ևն), կատարել է թարգմ–յուններ:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Յուրի Միքայելի (1927–2011), ճարտ.: ՀՀ վաստ. ճարտ. (1972): Ն–ի համահեղինակությամբ Երևանում կառուցվել են ձիարշավարան՝ հնգամարտիկների դպրոցով (1955), հեծանվահրապարակ (1980), «Արարատ» ֆուտբոլի թիմի Զորաղբյուրի ուսումնամարզ. համալիրը (1969), Վանաձորում՝ հիվանդանոց (1981), զբոսաշրջիկների հանգրվաններ՝ Ստեփանավանում (1977) և Սևանի ափին (1985), ևն:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Ռոբերտ Գեղամի (1912–1974), բեմանկարիչ: ՎԽՍՀ (1955), ՀԽՍՀ (1969) արվ. վաստ. գործիչ: 1940–ից՝ Թբիլիսիի հայկ. և ռուս. թատրոնների գլխ. նկարիչ: Ձևավորել է Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար», Գ. Սունդուկյանի «Պեպո», Զ. Դարյանի «Հանրապետության նախագահը» (1970, Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոն), Ա. Հարությունյանի «Սայաթ–Նովա», Ա. Տիգրանյանի «Անուշ» (երկուսն էլ՝ 1969, ԵՕՔԹ) և այլ բեմադրություններ:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Ռուբեն Պարույրի (ծ. 1959), քանդ.: Ժող. վարպետ (2015): Հեղինակ է ԱՍԱԼԱ–ի մարտիկներին նվիրված հուշարձանի (2000, Եռաբլուր), «Ջորավար Անդրանիկ» (2005, Փարիզ), «Խաչքար–տաճար» (2006, Օշականի Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու բակում) քանդակների, Սբ Հակոբի քանդակի՝ խաչքարով (2013, Երուսաղեմի Սբ Հակոբյանց եկեղեցու բակում), 1000–ից ավելի խաչքարերի և այլ գործերի: «Ռուբեն Նալբանդյան խաչքարերի վարպետաց դպրոցի» (2015) հիմնադիր:

ՀՀ «Մովսես Խորենացի» (2015), ՀՀ ՄՆ ոսկե (2016) մեդալներ, ՄՆ «Գրիգոր Նարեկացի» (2015) հուշամեդալ:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Սուրեն Ռուբենի (ծ. 1956), ըմբիշ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1976): Օլիմպ. խաղերի (1976), Եվրոպայի (1977), ԽՍՀՄ (1975, 1976, 1977, 1979, 1980) չեմպիոն: ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1980):

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Վահան Հովհաննեսի (1876–1902), գրականագետ–քննադատ: Փիլ. գիտ. դ–ր (1901): Հեղինակ է «Գեղարուեստի էութիւնը եւ նպատակը» (1899), «Պետրոս Դուրեան» (1901), «Հենրիկ Իբսէն» (1902) աշխ–ների:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Վաչե (Վաչիկ) Սմբատի (1919–1998), գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1969), պրոֆ. (1969): ՀՀ ԳԱԱ ակադ. (1994, թղթ. անդամ՝ 1971–ից): 1952–53–ին՝ Մոնդ–ի տնօրեն, 1956–65–ին՝ ԵՊՀ պրոռեկտոր, 1965–77–ին՝ ՀՀ ԳԱԱ գրկ–յան ինստ–ի, 1978–98–ին՝ հիմնարար գիտ. գրադարանի տնօրեն: Հեղինակ է «Վարդանանց պատերազմը և Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը»» (1955), «Թբիլիսին հայ մատենագրության մեջ» (1958), «Եղիշե» (1959), «Գրողը և պատմությունը» (համահեղ., 1970), «Սայաթ–Նովա» (1987), «Գրիգոր Նարեկացի» (1990) և այլ աշխ–ների:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Տիգրան Հովհաննեսի (1878–1954), երգիչ (քնար. տենոր), մանկավարժ: 1913–18–ին՝ Թիֆլիսում, 1918–21–ին Աստրախանում և Արմավիրում կազմակերպել և ղեկավարել է ժող. կոնսերվատորիաներ: Երգացանկում՝ եվրոպացի, ռուս և հայ կոմպոզիտորների ռոմանսներ, հայկ. ժող. ու աշուղ. երգեր:

ՆԱԼԻՎԿԻՆ Դմիտրի Վասիլևիչ (1889–1982), ռուս երկրաբան և հնէաբան: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1946), Թուրքմենստանի ԳԱ պատվ. անդամ (1951): Սոց. աշխ. հերոս (1963): Աշխ–ները վերաբերում են Ուրալի, Արևելաեվրոպ. պլատֆորմի և Միջին Ասիայի պալեոզոյի շերտագրության, հնէաբանության հարցերին: Մշակել է ֆացիաների մասին ուսմունք:

ԽՍՀՄ Պետ. (1946), Լենինյան (1957) մրց–ներ:

ՆԱԼՅԱՆ Հակոբ, **Զմմարացի** (1702–1764), մատենագիր, մանկավարժ, մեկնիչ, եկեղեց. գործիչ: 1741–49 և 1752–64–ին՝ Կ. Պոլսի, 1749–52–ին՝ Երուսաղեմի հայոց պատրիարք: 1715–ին *Հովհաննես Կոլոտ Բաղիշեցու* հետ Կ. Պոլսում հիմնադրել է Սայր դպրատունը (*Պեզմյան մայր վարժարան*): Հեղինակ է աստվածաբան. և դավանաբան. շուրջ 25 աշխ–յան («Վէմ հաւատոյ», 1733, «Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ», 1745, «Հոգեշահ», 1746, «Զէն հոգևոր», 1757, «Գանձարան ծանուցմանց», 1758, «Հոգևոր զրույցներ», հրտ.՝ 2013, ևն):

ՆԱԼՉԱՋՅԱՆ Ալբերտ Աղաբեկի (ծ. 1939), հոգեբան, փիլ.: Հոգեբ. գիտ. թեկնածու (1968): Թորգոմ և Կարինե *Նալչաջյանների* եղբայրը: Աշխ–ները վերաբերում են ստեղծագործության և ինտուիցիայի, անձի և սոցիալ. հոգեբ–յան, էթնոմանկավարժության, էթնոքաղ–յան, ազգ. ինքնության խնդիրներին: Մշակել է էթնիկ ինքնապաշտպ–յան և էթնիկ ընավորության, անձի սոցիալ–հոգեբ. հարմարվողականության տեսությունները:

ՆԱԼՉԱՋՅԱՆ Գրետա Գուրգենի (1936–2012), բեմանկարիչ: Ձևավորել է «Կյանքի լավագույն կեսը» (1979), «Ընկեր Փանջունի» (1992, երկուսն էլ՝ զգեստների ձևավորում, Հայֆիլմ) կինոնկարները, «Դեկամերոն» (ըստ Բոկաչչոյի, 1982), «Մի գավաթ բարություն» (ըստ Վ. Սարոյանի, 1994), «Անբան Հուռին» (ըստ Հ. Թումանյանի, 1996) և այլ ներկայացումներ:

ՆԱԼՉԱՋՅԱՆ Թորգոմ Աղաբեկի (ծ. 1938), ճարտարագետ–էլեկտրիկ: Տեխ. գիտ. դ–ր (1987), պրոֆ. (1987): Ալբերտ և Կարինե *Նալչաջյանների* եղբայրը: 1991–93–ին՝ ԵԺՏԻ ռեկտոր: Աշխ–ները վերաբերում են վիճակագր. բնույթի բարդ տեխնոլոգ. շարժընթացների մաթ. մոդելավորման և արդյունավետ կառավարման, նաև արտաքին միջավայրի, տրանսպորտ. միջոցների մոդելավորման և կառավարման հարցերին: Մշակել է գունավոր մետաղների հանքահարստացման ավտոմատացման տեղեկատվ. սարքերի և մաթ. մոդելավորման եղանակներ:

ՆԱԼՉԱՋՅԱՆ Կարինե Աղաբեկի (ծ. 1954), հոգեբան: Հոգեբան. գիտ. թեկնածու (1989): Ալբերտ և Թորգոմ *Նալչաջյանների* քույրը: Աշխ–ները վերաբերում են էթնոհոգեբանությանը, անձի և սոցիալ. հոգեբանության («Էթնիկական ինքնագիտակցություն: Հայերի ինքնագիտակցության փորձարարական հետազոտություն», 2003) հարցերին:

ՆԱԼՉԻԿ, ք. (1921–ից) ՌԴ–ում: Կաբարդինա–Բալկարիայի մայրաքաղաքը համանուն գետի ափին: Երկթղ. կայարան է: Բն.՝ 339 հզ. (2015): Ն–ում են Կաբարդինա–Բալկարիայի մի շարք ԳՀԻ–ներ, 3 բուհ, 2 թատրոն, թանգարաններ ևն: Գործում է ջերմուկա–լեռնակլիմ. առողջարան: Հս. Կովկասի զբոսաշրջության և ալպինիզմի կենտրոն է: Հիմնադրվել է 1817–ին:

ՆԱԽԱԲԵՐԱՆՆԵՐ (Protostoma), *ողնաշարավոր* կենդանիների խումբ. ընդգրկում է տափակ, կլոր և օղակավոր որդերը, նեմերտինները, փափկամարմինները, հոդվածոտանիները: Բերանային ճեղքն առաջանում է սաղմն. նախն. բերանի (բլաստոպոր) տեղում կամ նրա առջևի մասում:

ՆԱԽԱԲՅԵՎ Վլադիմիր Դմիտրևիչ (1938–2002), ռուս. կինոօպերատոր: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1976), ժող. արտիստ (1991): Լավագույն ֆիլմերը

նկարահանել է Է. Ա. *Ռյազանովի* հետ՝ «Տվնք բողոքի գիրքը» (1965), «Զգուշացիր ավտոմեքենայից» (1966, երկուսն էլ՝ Ա. Մ. Մուկասեյի հետ), «Հաջողության զիգզագները» (1968), «Ճակատագրի հեգնանք կամ Բաղնիքդ անուշ» (1975), «Նույն ինքը՝ Մյունխհաուզենը» (1979), «Սիրո բանաձևը» (1984, վերջին երեքը՝ հեռուստաֆիլմ):

ԽՍՀՄ (1977), ՌԽՖՍՀ (1979) Պետ. մրց-ներ:

ՆԱԽԱԳԱՋԱՆՆԵՐ, կոյանցքավորներ, ժամանակակից առավել պարզունակ կաթնասուններ՝ *միանցքանիների* միակ կարգով:

ՆԱԽԱԳԱՀ, պրեզիդենտ (լատ.՝ praesidens – բառացի՝ առջևում նստող), 1. բազմաթիվ երկրներում պետության ընտրովի գլուխը: 2. Մի շարք հաս. և գիտ. կազմ-յունների ընտրովի ղեկ. (օր.՝ ԳԱ նախագահ, ՀԿ նախագահ ևն): 3. Ընկ-ների, կազմ-յունների ևնի բարձրագույն պաշտոնատար անձ (հիմնադրամի նախագահ, հոգաբարձուների խորհրդի նախագահ ևն):

ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ, տվյալ լեզվի քերական. կանոններով ձևավորված շարահյուս. կառուցվածք (բառ, բառակապակցություն), մտքի ձևավորման, արտահայտման և հաղորդման հիմն. միջոց: Ն-յան բնորոշ հիմն. հատկանիշներն են ստորոգումը, քերական. ձևավորվածությունը և մտքի ավարտվածությունը: Տարբերում են Ն-յան միակազմ և երկկազմ, պարզ (համառոտ ու ընդարձակ) և բարդ (համադաս. ու ստորադաս.), պատմող., հրամայական, հարց., բացականչ. և այլ տեսակներ:

ՆԱԽԱԴԵՊ, 1. դեպք, որը տեղի է ունեցել ավելի վաղ և օրինակ կամ արդարացում է հաջորդող նմանատիպ դեպքերի համար: 2. **Դատական Ն.**, որևէ որոշակի գործով դատարանի այն վճիռը, որը համանման գործեր քննելիս նույն կամ ցածր ատյանի դատարանների համար կիրառվում է որպես պարտադիր կանոն: Կիրառվում է Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի որոշ նահագ-ների և մի շարք այլ երկրների իրավ. համակարգերում (նախադեպ. իրավունք):

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ, վաղ և նախադպրոց. տարիքի երեխաների դաստիարակության հիմնարկներ՝ *մանկապարտեզներ*, նախակրթարաններ: ՀՀ-ում գործում են պետ. և համայնք. ենթակայության 622 (2011-ից՝ անվճար հիմունքներով) և 17 ոչ պետ. Ն. հ.:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, մանկավարժության բնագավառ. ընդհանուր մանկավարժությունից առանձնացել է XIX դ-ի 2-րդ կեսին: Ուսումնասիրում է նախադպրոց. տարիքի, այդ թվում՝ վաղ տարիքի երեխաների դաստիարակության օրինաչափությունները: Սերտորեն կապված է մանկան հոգեբ-յան, տարիք. անատոմիայի ու ֆիզիոլոգիայի, մանկաբուժության հետ:

ՆԱԽԱՀԻՆՖԱՐԿՏԱՅԻՆ ՇՐՋԱՆ, նախահինֆարկտային վիճակ, կրծքային հեղձուկի նոպաների բնույթի փոփոխություն (հաճախացում, ուժեղացում, դեղանյութերի հանդեպ կայունություն, նոպաներ՝ հանգստի ժամանակ) մինչև սրտամկանի ինֆարկտի առաջացումը: Սրտի իշեմիկ հիվանդությամբ անձանց Ն. շ. տևում է մի քանի օրից մինչև 1 շաբաթ:

ՆԱԽԱԼԵԶՈՒ, ընդհ. լեզու (հիմք–լեզու). ընկած է միևնույն *լեզվաընտանիքին* պատկանող (ցեղակից) լեզուների հիմքում (օր.՝ լատ-ը՝ ֆրանս-ի, պորտուգ-ի, իսպ-ի, իտալ-ի և այլ ռոման. լեզուների համար):

ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹՅՈՒՆ, կրոն. ըմբռնում, ըստ որի՝ պատմությունը և անհատի կյանքն ու «փրկությունը» պայմանավորված են Աստծու կամքով: Ուսմունքը՝ պրովիդենցիալիզմը, ձևավորվել է միջնադարում և Օգոստինոսի ուսմունքով դարձել քրիստ. պատմագրության հիմքը: Տես նաև *Ճակատագիր*:

ՆԱԽԱԾԱՆՑ, ածանց. դրվում է բառարմատի (բառի) սկզբում՝ փոխելով նրա բառ. կամ քերական. իմաստը (ան–, ապ–, դժ–, տ–, չ–, նախ–, վեր–, ենթ–, ստոր- ևն):

ՆԱԽԱԾԵՐՄՈՒՆԱԿԱՆ ՓՈՒԼԿՈՋՆԵՐ, հոգեկան հիվանդությունների խումբ. առաջանում են 50–60 տարեկանում: Հիմն. ձևերից են ընկճվածությունը (դեպրեսիա), մելամաղձությունը և զառանցանքը:

ՆԱԽԱԾԻԼ, պրոթալիում (< հուն. pro – նախա, մակա և thallium – աճ), ձիաձետների, գետնամուշկերի, պտերների և սելագինելների սեռ. սերունդը (գամետոֆիտ):

ՆԱԽԱԿԵՆԴԱՆԻՆԵՐ, միաբջիջ օրգանիզմների ենթաթագավորություն: Ն-ի օրգանիզմը կազմված է 1 բջջից կամ բջիջների գաղութից: Չափերը՝ 2–4 *մկմ*-ից 1 *սմ*: Բազմանում են սեռ. և անսեռ ճանապարհով: Կան ազատ ապրող և մակաբույծ ձևեր: 1980-ական թթ-ից սկսած՝ Ն. դիտվում են որպես վերնաթագավորություն՝ 5–9 տիպերով՝ սպորավորներ, կնիդոսպորիդիաներ, միկրոսպորիդիաներ, ինֆուզորիաներ, սարկոմաստիգոֆորներ ևն, որոնք ընդգրկում են սարկոդայիններին և մտրակակիրներին: Հայտնի է ավելի քան 30 հզ. տեսակ:

ՆԱԽԱՄԵՍՐՈՊՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ, մինչև *մեսրոպյան դպրոցների* ստեղծումը Հայաստանում գործած օտարալեզու (հուն., ասոր.) դպրոցներ: Գոյություն են ունեցել դեռևս հեթանոս. շրջանում, սակայն առաջին վավեր. վկայությունները քրիստոնեության ժամանակաշրջանից են: Ագաթանգեղոսի վկայությամբ՝ դրանք հիմնադրել են Գրիգոր Լուսավորիչը, իսկ հետո՝ Ներսես Մեծը՝ հուն. և ասոր. դպրությանը հմուտ աշակերտներ պատրաստելու համար:

«ՆԱԽԱՇԱՎԻՂ», գիտամեթոդ. հանդես (2001-ից, Երևան): ՀՀ ԿԳՆ Կրթության ազգ. ինստ-ի հրտ-յուն: Խմբ-ներ՝ Վիկտոր Մարտիրոսյան, Կարինե Թորոսյան (2006-ից):

ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔ, 1. անհատ. և հաս. գիտակցության մեջ հավատ նախանշանների նկատմամբ, որոնք նախորդում են բանականությանը: Ն-ի հիմքում այն համոզմունքն է, որ ապագան իբր դրսևորվում է ներկայում: 2. Որոշ երևույթների նկատմամբ կանխակալ վերաբերմունք, որն արտահայտվում է մտածելակերպում և վարվելակերպում ամրագրված կարծրատիպերով:

ՆԱԽԱՐԱՐ, 1. **նահապետ, տանուտեր, հողատեր**, կալվածատեր իշխան հին և միջնադար. Հայաստանում: ***Նախարարական իրավունքը*** ժառանգաբար անցել է Ն-ի ավագ որդուն՝ սեպուհին: Ն-ները, որպես արքունի գործակալներ, վարել են որոշակի ***գործակալություններ***: 2. ՀՀ-ում ***նախարարության*** ղեկ-ը՝ աշխ-ը ղեկավարող պաշտոնատար անձ, կառ-յան անդամ:

ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, իրավ. նորմերի ամբողջություն, որով կարգավորվել են հաս-քաղ. հարաբերությունները Հայաստանում վաղ ավատատիր. ժամանակաշրջանում: Ձևավորվել է III–IV դդ-ում: Գործել է մինչև VIII դ.: Ն. ի-ի համաձայն՝ նախարարները թագավորի վասալներն էին, պարտավոր էին իրենց զորքով ծառայել նրան, մասնակցել թագավոր. խորհրդին, կառավար. ապարատում պաշտոններ վարել ևն:

ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ, կառ-յան անվանումը մի շարք երկրներում: ԽՍՀՄ-ում (այդ թվում՝ ՀԽՍՀ-ում) 1946–90-ին եղել է երկրի բարձրագույն գործադիր մարմինը, ձևավորել է ԽՍՀՄ ԳԽ-ն:

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, 1. հին և միջնադար. Հայաստանում նախարարի, նրա տոհմի ժառանգ. իշխանությունը որոշակի տարածքի սահմաններում: 2. Գործադիր իշխանության հանրապետ. մարմին ՀՀ-ում, որը կառավարում է որոշակի պետ. ընագավառ:

ՆԱԽԵՐԳԱՆՔ, գր., թատեր., երաժշտ. ստեղծագործությունների ներած. մաս, որը նախորդում է սյուժեի հիմն. դեպքերի ծավալմանը: Գր. (թատեր.) Ն-ում պատմվում է հիմն. գործողություններն ազդարարող և հիմնավորող դեպքերի մասին, կամ պարզաբանվում են հեղինակի գեղ. խորհրդածությունները, գեղագիտ. հայացքները (օր.՝ Հ. Թումանյանի «Անուշ» և «Թմկաբերդի առումը» պոեմների Ն-ները ևն): Օպերայի, բալետի, օրատորիայի, թատեր. ներկայացման նվագախմբային նախաբանը, որը հաճախ, որպես նաև ինքնուրույն երկ, կատարում են համերգներում (Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի վոկալ-սիմֆ. Ն. ևն):

ՆԱԽԻՄՈՎ Պավել Ստեպանովիչ (1802–1855), ռուս ծովակալ (1855): Ղրիմի պատերազմի ժամանակ Սինոպի մոտ ջախջախել է թուրք. նավատորմը (1853): 1854–55-ին՝ Սևաստոպոլի հերոս. պաշտպ-յան ղեկ-ներից: Մահացու վիրավորվել է Մալախով կուրգանում:

ՆԱԽԻՋԵՎԱՆ (մինչև XI դ.՝ *Նախճավան*), ք. Ադրբեջանում, Նախիջևանի ԻՀ մայրաքաղաքը Նախիջևան գետի աջ ափին: Բս.՝ 75,5 հզ. (2013): Երկթղ. կայարան է Բաքու–Երևան չգործող գծի վրա: Ունի օդանավակայան:

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, *Արարատյան գոգավորության* հվ-արլ. շարունակությունը՝ եզրավորված Վայքի, Զանգեզուրի, Վասպուրականի լ-շղթաներով, Սակուի դաշտով: Բարձր.՝ մինչև 800 *մ*: Լանդշաֆտը կիսաանապատային է, տափաստանային: Գոգավորության սահմաններում Արաքս գետի վրա կառուցվել է «Արաքս» ջրահանգույցի ջրամբարը:

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, վտմ Ադրբեջանում: Սահմանակից է ՀՀ-ին, Իրանին և Թուրքիային: Տարածքը՝ 5,5 հզ. *կմ*², բն.՝ 400 հզ. (2012): Մայրաքաղաքը՝ *Նախիջևան*: Կազմավորվել է 1991-ին՝ Նախիջևանի ԻԽՀ (Ադրբ. ԽՍՀ կազմում) հիմքի վրա: Տարածքի 75 %-ն ավելի քան 1000 *մ* բարձր-յան վրա է: Հս-ում ձգվում է Վայքի լ-շղթան, արլ-ում՝ Զանգեզուրի

լ–շղթան: Հվ–ում և հվ–արմ–ում Արաքս գետի երկ–յամբ ձգվող հարթավայրն է (բարձր.՝ 600–1000 *մ*):

Նախիջևանի տարածքն անցյալում եղել է Երվանդունիների, Արտաշեսյանների, Արշակունիների հայկ. թագավորության կազմում: Հին և միջին դարերում ընդգրկել է Այրարատ նահանգ–ի՝ Շարուր, Այունիքի՝ Երնջակ, Ճահուկ, մասամբ՝ Կովսական, Վասպուրականի՝ Նախճավան և Գողթն գվո–ները: Ռուս. կայսրության տարիներին Նախիջևանի տարածքը մտել է ***Հայկական մարզի***, ապա՝ Երևանի նահանգ–ի մեջ, բնակչության մոտ կեսը հայ էր: Հայ–թաթար. ընդհարումներից և ԱՀՊ–ից հետո իրականացված հայության ջարդից ու բռնագաղթից հետո Նախիջևանն անցել է Հայաստանի առաջին հանրապետությանը: Սակայն Բաթումի (1918) և Ալեքսանդրապոլի (1920), ապա Կարսի (1921) պայմանագրերով այն տրվել է Ադրբեջանին: Իրար հաջորդող հայաթափումից հետո հայերն այստեղ նվազել են մինչև բնակչության շուրջ 10 %–ը: Հայաթափությունը շարունակվել է նաև խորհրդ. տարիներին. Խորհրդ. Ադրբեջանի հայահալած քաղ–յան հետևանքով Նախիջևանում մնացած սակավաթիվ հայերը հեռացել են Նախիջևանից Ազգային շարժման տարիներին՝ 1988–91–ին: Ամբողջովին ոչնչացվել է տարածաշրջանի հայկ. մշակութ. ժառանգությունը:

«ՆԱԽԻՋԵՒԱՆ», ազգ., հաս–քաղ., գր., մշակութ. պարբ. (1999–2006, Երևան): «Նախիջևան» հայրենակց. միության, ապա՝ Նախիջևանահայոց ազգ. խորհրդի պաշտոնաթերթ: Հիմնադիր–խմբ.՝ Ռաֆայել Համբարձումյան:

ՆԱԽՃԱՎԱՆ, 1. գվո ***Վասպուրական*** նահգ–ում: Ներառել է Երասխ գետի Նախճավան վտակի հովիտը՝ ընդգրկելով համանուն քաղաքն իր շրջակայքով, և Շարուրի դաշտը: Համապատասխանում է այժմյան ***Նախիջևանի Ինքնավար Հանրապետության*** Նախիջևանի և Բաբեկի շրջաններին: 2. Նախճավան գվո–ի կենտրոնը: Ըստ ավանդության՝ հիմնադրել է (մ. թ. ա. 3669) ***Նոյը***, երբ Համաշխ. ջրհեղեղից հետո նախ իջևանել է այնտեղ (այստեղից՝ ***Նախիջևան*** անվանաձևը): Մ. թ. ա. III–II դդ–ում եղել է ***Մուրացյան*** տոհմի կալվածքը: Արտաշեսյանների և Արշակունիների ժամանակ միացվել է արքունի կալվածքներին: Բագրատունիների տիրապետության հաստատմամբ՝ IX դ–ի վերջին ազատագրվել է արաբ. տիրապետությունից (նվաճվել էր VIII դ–ի սկզբին): XVIII դ–ի կեսերից եղել է Պարսկաստանի Նախիջևանի խանության կենտրոնը, 1828–ին ***Թուրքմենչայի պայմանագրով***, միացվել է Ռուս. կայսրությանը: Ընդգրկվել է ***Հայկական մարզի***, Երևանի գվո–ի, Երևանի նահգ–ի (1849–1918) կազմում: 1918–ին գրավել են թուրքերը, 1919–ի հունիսի վերջին հայկ. ուժերն ազատագրել են Ն.: 1920–ի հունիսին այնտեղ հաստատվել են խորհրդ. կարգեր: 1921–ին անջատվել է Հայաստանից և որպես ինքնավար տարածք տրվել Խորհրդ. Ադրբեջանին: 1924–ի փետր–ից՝ ***Նախիջևան***:

ՆԱԽՃԱՎԱՆ, ք. Պարսկահայք նահգ–ի ***Թարթի*** գվո–ում՝ Ուրմիա (Որմի) ք–ից հս–արլ.՝ Կապուտան (Ուրմիա) լճի ափին: Հիշատակվում է VII դ–ից (Սեբեոս): XX դ–ի սկզբին (կոչվել է Նախիջևան թեփե) Իրանի Ուրմիա գվո–ի հայաբնակ գյուղերից էր՝ 76 տուն բնակչով, 1948–ին՝ 55 տուն (264 հայ): Հետագա տարիներին Ն–ի հայերի մեծ մասը տեղափոխվել է այլ վայրեր (այդ թվում՝ ՀՀ):

ՆԱԽՃԱՎԱՆԻ ԵՎ ԽՐԱՄԻ ԿՈՏՈՐԱԾ, կազմակերպել են արաբ նվաճողները 705–ին՝ հայ նախարար. տները բնաջնջելու նպատակով: 703 և 705–ի ապստամբության պարտությունից հետո արաբները հայ նախարարներին իրենց ռազմաջոկատներով խարեությամբ (ոռճիկը կարգավորելու և այլ պատրվակով) հրավիրել են Նախճավան: Ձերբակալելով մոտ 1200 մեծատոհմիկների՝ նրանց ողջակիզել են Նախճավանի և մոտակա Խրամ գ–ի եկեղեցիներում: 705–ը կոչվել է «Կրակի տարի»:

ՆԱԽՅԱՆ–ԴԱՊՍՏԱՆՅԱՆ ԼԵՋՈՒՆԵՐ, ***արևելակովկասյան լեզուներ***, կովկաս. լեզուների ճյուղ (մոտ 40 լեզու): Տարածված են Չեչնիայում, Ինգուշեթիայում, Դաղստանում, Ադրբեջանում, նաև Վրաստանի և Թուրքիայի որոշ վայրերում: Ներառում են ավար., անդիական, նախյան, լակ., դարգվին., լեզգ. խմբերը: Ն–դ. լ–ի առանձին խումբ են նախյան լեզուները:

ՆԱԽՆԱԳԱՐՅԱՆ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳ, հաս–տնտ. 1–ին հասարակարգը մարդկության պատմության մեջ. նախորդել է պետությունների կազմավորմանը: Հայաստանի բազմաթիվ վայրերում հայտնաբերված նյութ. հուշարձանները փաստում են, որ այն ունեցել է իր զարգացման բոլոր փուլերն ու օրինաչափությունները:

ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, մասնագիտ. կրթության ձևերից: Կադրեր է պատրաստում արդ–յան, շին–յան, տրանսպորտի և կապի, գղտ–յան, մշակույթի, առողջապ–յան, կենցաղսպասարկման բնագավառների համար, զբաղվում նրանց որակավորման բարձրացմամբ:

Հայ իրականության մեջ 1853–55–ին երկրագործ. վարժարան է հիմնադրել Սերովբե ***Վիչենյանը***, 1870–ին Վանում նման ուսումնարան է բացել ***Խրիմյան Հայրիկը***, 1870–ին Թիֆլիսում հիմնադրվել է Մի–քայելյան ուսումնարանը: Միջին մասնագիտ. ուսումնարաններ են բացվել Նոր Նախիջևանում (1879), Կարինում (1883), Կ. Պոլսում (1886) և այլուր: 1921–ին ՀԽՍՀ–ում լուսժողկոմատի կազմում ստեղծվել է պրոֆտեխկրթության վարչություն: 1921–22–ին գործել է 3, իսկ 1986–87–ին՝ 99 միջին մասնագիտ. ուս. հաստատություն՝ 180 մասնագիտ–յամբ: 1990–ական թթ–ի վերջերից Ն. և մ. մ. կ–յան բնագավառը կանոնակարգվել է. մշակվել է հատուկ օրենք (2005), Կրթության ազգ. ինստ–ում ստեղծվել է Մասնագիտ. կրթության և ուսուցման զարգացման ազգ. կենտրոն, բացվել են ուսումնարաններ և քոլեջներ: Ներկայում ՀՀ–ում գործում են 25 արհեստագործ. և ավելի քան 80 միջին մասնագիտ. պետ. ուս. հաստատություններ:

ՆԱԽՇՔԱՐՅԱՆ Ֆլորա Վլադիմիրի (ծ. 1949), խմբ.: 1971–76–ին՝ ՀԽՍՀ ԳԱ «Հասարակական գիտությունների բանբեր» թերթի խմբ., 1976–ից աշխատել է «Կոմունիստ» (ռուս., 1990–ից՝ ***«Գոլոս Արմենիի»***) թերթի խմբագրությունում, 1992–ից՝ գլխ. խմբ.:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2001):

ՆԱԽՈ ՔԵՒԻ Մոկացի (Նահապետ), **Նախո Բիձա** (մոտ 1851–1916/1920), ***«Սասնա ծռեր»***–ի ասացող: Ն. Ք–ու «Դավիթ և Մհեր» պատումը գրառել է Սանուկ ***Արեղյանը*** (1886–ին), որի հավաստմամբ՝ Ն. Ք. եղել է ավանդապահ ու ստուգապատում ասացող, երգել է նաև ժող. վեպի չափածո հատվածներ, որոնք նոտագրել է Կոմիտասը:

ՆԱԽՈՂԿԱ, ք. ՌԴ Պրիմորիեի երկրամասում, նվինգստ Ճապոն. ծովի համանուն ծովախորշի ափին: Բև.՝ 156 հզ. (2014): Երկաթղ. կայարան է:

ՆԱԿՀՈՆՈՒԱՏՋԱՄԻՄԱ, **Կորատ**, ք. Թաիլանդում՝ Մուն գետի ափին, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բև.՝ 145,8 հզ. (2008):

ՆԱԿՅԱՆ Ռուբեն Գևորգի (1897–1986), քանդ., գրաֆիկ: Հեղինակ է անիմալիստ. («Ցուլը և կովը», «Փոկը», «Հորթը» ևն), աստվածաշնչ. և դից. թեմաներով («Վերնարայի ծնունդը», «Լեդան և Կարապը», 1978–80, ևն) հորինվածքների, դիմանքանդակների («Մարսել Դյուշան», 1943, ևն), «Խաչից իջեցումը» մոնումենտալ քանդակի (1972, նվիրված է Մեծ եղեռնի զոհերին, Նյու Յորքի Սբ Վարդան եկեղեցու հրապարակում), գծանկարների, վիմագրությունների: Ն–ի գեղագիտ. սկզբունքները ձևավորվել են Արշիլ ***Գորկու*** արվ–ի ազդեցությամբ:

ՆԱԿՏՈՆԳԱՆ, գետ Կորեայի Հանրապետությունում: Երկ.՝ 526 *կմ*, ավազանը՝ 24 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 380 *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Արլ–կորեական լ–ներից և թափվում է Կորեական նեղուցը: Նավարկելի է 340 *կմ*: Գետաբերանում է Պուսան ք.:

ՆԱԿՈՒՐՈՒ (Nakuru), ք. Քենիայում, Ռիֆտ Վալի պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բև.՝ 275 հզ. (2010):

ՆԱՀԱ, ք–նվինգստ Ճապոնիայի Օկինավա կղզում, համանուն պրեֆեկտուրայի վարչ. կենտրոնը: Բև.՝ 318 հզ. (2014):

ՆԱՀԱՆԳ, մի շարք պետություններում (ԱՄՆ, Հնդկաստան, Մեքսիկա ևն) դաշնության կազմի մեջ մտնող պետ. վոմ–ի անվանումը:

ՆԱՀԱՊԵՏ, լ–գագաթ Զանգեզուրի լ–շղթայում՝ Գեղիի վերին հոսանքի ավազանում՝ ՀՀ Սյունիքի մարզի ու Նախիջևանի սահմանագլխին: Բարձր.՝ 3510 *մ*: Կատար. մասը լերկ ու ժայռոտ է: Պահպանվել են սառցադաշտ. ռելիեֆի ձևեր: Լանդշաֆտը մարգագետնային է:

ՆԱՀԱՆՁ ՏԱՐԻ, օրացույց. տարի. ունի 366 օր (1 օր ավելի, քան սովոր. տարին): 4 տարին մեկ անգամ լինում է Ն. տ., և փետր. ամիսն ունենում է 29 օր՝ 28–ի փոխարեն:

ՆԱՀԱՊԵՏ Ա. ԵԴԵՍԱՑԻ, **Ուռհայեցի** (ծ. թ. անհտ–1705), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1691–ից: Եղել է Եդեսիայի եպս.: Մայր աթոռի միաբանները, դժգոհելով Ն. Ա. Ե–ու կառավարումից, 1695–ին կաթողիկոս են օծել Իրանա–Հնդկաստանի թեմի առաջնորդ Ստեփանոս Ջուղայեցուն: Սակայն 10 ամիս անց Թավրիզում ապաստանած Ն. Ա. Ե. Իրանի շահ Սուլթան Հուսեյնի օգնությամբ գահընկեց է արել նրան և վերադարձել Սբ Էջմիածին: Պարսկ. իշխանությունների հետ հարաբերությունները չվատացնելու նպատակով 1699–ին մերժել է ***Իսրայել Օրու***՝ ազգ–ազատագր. պայքարի ծրագիրը:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ, Նահապետ վարպետ աշըղ Քուչակ (XV դ–ի վերջ/XVI դ–ի սկիզբ–1592), աշուղ–երգիչ: Ն. Ք–ի անունով գրավոր և բանավոր պահպանվել են 10 կրոն., բարոյախրատ. և սիր. երգեր, որոնցից 7–ը գրված են հայատառ թուրք–ով: 1880–ական թթ–ին Ն. Ք–ին են վերագրվել նաև միջնադար. *հայրենները*: Թեև 1920–ական թթ–ին Մանուկ *Աբեղյանն* ապացուցել է այդ վերագրման անհիմն լինելը, սակայն շարունակաբար Ն. Ք–ին են համարել հայրենների հեղինակ, և նրա անունով են հրատարակվել ու բազմաթիվ լեզուներով թարգմանվել այդ երգերը: Ն. Ք. դարձել է պայման. և հավաք. անուն, որով էլ հայտնի է հայ միջնադար. քնարերգության այդ մեծ և հարուստ ժառանգությունը:

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ Աբրահամ Լևոնի, **Պողոս վարդապետ** (1820–1906), եկեղեց., հաս., գործիչ: 1857–ից եղել է Հայաստանի հայ կաթոլիկների հոգևոր առաջնորդը: 1859–ին ծննդավայր Քավթաղլուում (այժմ՝ Փանիկ, ՀՀ Շիրակի մարզում) հիմնադրել է քառամյա հայկ. դպրոց, 1906–ին՝ հիվանդանոց: Ռուսաստանի Կառ–յան «Սբ Աննայի ոսկե խաչ» (1885):

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ Բորիս Սերգեյի (ծ. 1946), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1990), պրոֆ. (2004): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2014): Կառուցել է թույլ կախյալ պատահական դաշտերի սահման. թեորեմների տեսություն և այն կիրառել գիբսյան պատահական դաշտերի համար, զարգացրել մարտինգալների տեսության հիմն. դրույթները բազմաչափ տարածությունների դեպքում և ստացած արդյունքներն օգտագործել վիճակագր. ֆիզիկայի որոշ խնդիրների լուծման համար: Հայկ. մաթ. միության փոխնախագահ (1991–94):

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ Գաբրիել (Ստեփան) Սողոմոնի (1857–1939), բանասեր, հայագետ, խմբ.: ՎնտՄՄ անդամ (1874), քին. (1877): 1919–20–ին՝ *«Բազմավէպ»*–ի խմբ.: Հեղինակ է «Ուղղագրութիւնք ազգային մատենագրաց» (1907), «Սուրբ Մեսրովբ եւ Հայաստանի ոսկէդարն» (1914), «Քրիստոնէական ճարտարապետութիւն» (1930), համահեղ.՝ «Վենետկոյ Մխիթարեանց յանձնաժողովին կարծիքը հայերէն ուղղագրութեան մասին» (1927) աշխ–ների:

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ Խաչիկ Հովսեփի (ծ. 1931), նյարդաֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ–ր (1991), պրոֆ. (2012): Աշխ–ները վերաբերում են տեսողության ֆիզիոլոգիային, կենսաքիմ. մեխանիզմներին, ԿՆՀ պլաստիկության մեխանիզմների պարզաբանմանը և վնասված ու այլ հյուսվածքների ֆունկցիոնալ կառուցվածք. վերականգնող. կենսընթացներին նպաստող եղանակների մշակմանը, գերհույզի բժշկականսբ. հարցերին: Ուղեղի հետազոտության միջազգ. կազմ–յան, Նյու Յորքի ԳԱ, Տեղեկատվայնացման միջազգ. ակադ–ների անդամ (1996–ից):

ՌԴ Մ. Վ. Լոմոնոսովի անվ. ոսկե մեդալ (2001):

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ Մնացական Հովհաննեսի (Արճեշենց Քաջբերունի, 1910–1983), գրականագետ, խմբ.: Բանասիր. գիտ. թեկնածու (1948): ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1973): 1937–ին՝ *«Ամանգարդ»* թերթի խմբ., 1961–65–ին՝ Երևանի օտար լեզուների մանկավարժ. ինստ–ի ռեկտոր, 1971–74–ին՝ *«Լույս»* հրտչ–յան, 1974–77–ին՝ ՀԽՍՀ լուսավորության նախ–յան ԳՀԻ տնօրեն: Հեղինակ է «Հովհաննես Թումանյանը ժողովուրդների բարեկամության և խաղաղության երգիչ» (1954), «Ավետիք Իսահակյան» (1955) աշխ–ների:

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ Ռաֆայել Հայկարամի (1945–2010), արձակագիր: Հեղինակ է «Հրաշեկ նժույգներ» (1983), «Մեղեդի երևակայական ջութակի համար» (1994), «...Եվ ծագեց խավարը» (2003), «Գրամեքենա» (2011) և այլ վիպակների ու պատմվածքների ժող–ների, «Անջո հեծանիվը» (2004), «Ոստիկանության սերժանտը» (2009) և այլ մանկ. վիպակների: ՀԳՄ և Հրանտ Սիմոնյան հիմնադրամի մրց–ներ:

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ Ռաֆիկ Ասքանազի (ծ. 1943), պատմաբան–ազգագրագետ: Պատմ. գիտ. դ–ր (2008), պրոֆ. (2010): Աշխ–ները վերաբերում են հայ ազգագրության աղբյուրների ու պատմության լուսաբանմանը, արևմտահայության էթնոմշակութ. բնութագրի բացահայտմանը, հայ ազգագրության ամենատարբեր հիմնահարցերի: ԵՊՀ ոսկե (2014) մեդալ:

ՆԱՀԱՊԵՏՈՎ Ռոդիոն (Ռոդին) Ռաֆայելի (ծ. 1944), դերասան, կինոռեժ.: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1985): Կինոդերերին բնորոշ են ներքին հուզ. լարվածությունը և արտաքին զսպվածությունը: Նկարահանել է «Քեզ հետ և առանց քեզ» (1974), «Դեպի աշխարհի ծայրը» (1976), «Մի կրակեք սպիտակ կարապների վրա» (1980, հեռուստաֆիլմ), «Գիշերվա վերջին» (1987), «Հովանոց նորապսակների համար» (1986), «Վարակում» (2007) և այլ ֆիլմեր: Նկարահանվել է «Քաջշանք», «Սիրահարներ», «Սիրո ստրուկը», «Նշանաբան պետք չէ», «Ուշացած սեր» և այլ կինոնկարներում: 1989–2003–ին՝ ԱՄՆ–ում:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1986), Ա. Դովժենկոյի անվ. արծաթե մեդալ (1984):

ՆԱՂԱՇ ՀԱԿՈԲ Հովսաթանյան (1685/90–1757), բանաստեղծ, նկարիչ, ծաղկող: Գրել է հայ., վրաց., թուրք.: Հոր՝ *Նաղաշ Հովսաթանի* մահվան կապակցությամբ գրել է «Ողբերգութիւն յաղագս մահուան գեղեցկարուեստ վարպետ Յովսաթանի Նաղաշ...» (1722) ողբը: Ն. Հ–ի բանաստեղծություններից 35–ը Մտնդ–ում են, 21–ը տպագրվել են Նաղաշ Հովսաթանի «Բանաստեղծություններ» (հրտ.՝ 1951) ժող–ում: Նկարազարդել է «Քաղուածք Յաւէտարանացը» (1720, Մտնդ., ձեռ. № 8645), ստեղծել հաստոցային նկարներ (Ն. Հ–ին են վերագրվում «Սանդուխտ կույսը», 1727, «Թադեոս առաքյալը», 1727, «Ղազարոսի հարությունը», 1729, բոլորը՝ ՀԱՊ):

ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆ (1661–1722), գրիչ, նկարիչ, բանաստեղծ, աշուղ: *Հովսաթանյան* ընտանիքից: Ընդօրինակել ու ծաղկել է ձեռագրեր (Մտնդ., ձեռ. № 3628), ստեղծել հաստոց. ու մոնումենտալ գեղանկարներ, ճանաչվել հմուտ նկարիչ և վաստակել «Նաղաշ» (արաբ.՝ զարդանկարիչ) պատվ. տիտղոսը: Նկարազարդել է Երևանի Սբ Պողոս–Պետրոս (պահպանված հատվածները՝ ՀՊԹ), Զորավոր (Անանիա Առաքյալի) և Կաթողիկե եկեղեցիները: Հեղինակ է «Գովասանութիւն Երևանայ քաղաքին» տաղի: Եղել է Քարթլիի Վախթանգ VI թագավորի պալատ. երգիչն ու նկարիչը: Նկարազարդել է Էջմիածնի Սայր տաճարը (1710–20):

Ն. Հ. միջնադարի նշանավոր բանաստեղծներից է, XVIII դ–ի հայ աշուղ. պոեզիայի հիմնադիրը: Բանաստեղծությունների ամբողջ ձեռագրերը Երևանի (ձեռ. № 3263, 4426) և Վիեննայի (ձեռ. № 587, 647) մտնդ–ներում են:

ՆԱՂԱՇՅԱՆ Հասմիկ Հովհաննեսի (1919–2003), դերասանուհի: ՀՀ վաստ. արտիստ (1956): Դերերից են՝ Ռոզալիա (Շիրվանզադեի «Պատվի համար»), Ամալյա (Ֆ. Շիլլերի «Ավազակներ») ևն, 1959–ից՝ ԵՍՓ դերասանուհի–տիկնիկավար (Մարիննե՝ Ա. Շահինյանի «Արագիլ, բարով եկար», Թագուհի՝ «Չախ–չախ թագավորը»՝ ըստ Հ. Թումանյանի, ևն):

ՆԱՂԱՇՅԱՆ Հովհաննես Զավենի (ծ. 1950), անասնաբույժ: Անասնաբուժ. գիտ. դ–ր (1994), պրոֆ. (2002): Աշխ–ները վերաբերում են գղտ. կենդանիների ու թռչունների ոչ վարակիչ և մակաբուծ. հիվանդություններին, դրանց բուժման ու կանխարգելման խնդիրներին:

Անասնաբույժ–մակաբուծաբանների ամերիկ., ՌԳԱ–ին առընթեր մակաբուծաբանների միությունների անդամ:

ՆԱՂԱՇՅԱՆ Հովհաննես Մկրտչի (1876–1968), փայտագրող վարպետ, կահույքագործ: 1900–ական թթ–ի սկզբին Ալեքսանդրապոլում հիմնադրել է արվեստանոց և քանդակազարդ կահույքի արտադր–յուն: Պատրաստել է Կարսի ռուս. զինվ. եկեղեցու Ավագ խորանի, Երևանի ռուս. Նիկոլայևյան տաճարի դռներն ու քանդակազարդ խաչկալները, Երևանի ազգ. գրադարանի կահույքը, Մտնդ–ի դռները, նաև բազմոց–պահարանի նոր տիպ, զարդ. տարբեր հորինվածքներով փայտե սկուտեղներ, սկահակներ ևն:

ՆԱՂԱՐԱ (արաբ.՝ naghara – գոչյուն, աղաղակ), **տմբլա**, ժող. թմբուկի տեսակ: Կազմված է կավե 2՝ մեծ ու փոքր թաղարներից՝ վերևից ձգված կաշվե թաղանթով: Նվագում են փայտե թակիչներով: Այժմ Հայաստանում Ն. հազվադեպ է գործածվում:

ՆԱՄԱ, **դամարա**, նամա ժող–ի լեզուն: Նամիբիայի ազգ. լեզուն: Պատկանում է կոյսան (հոտենդոտ–բուշմենն.) լեզուներին: Տարածված է նաև Բոտսվանայում և ՀԱՀ–ում: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՆԱՄԱԶ (պարսկ.՝ nemaz, թուրք.՝ namaz – աղոթք), մահմեդականների առօրյա պարտադիր աղոթքը. կատարվում է օրական 5 անգամ: Արաբ. հոմանիշը՝ սալաթ:

ՆԱՄԱԿԱՆԻ, գրողների և այլ գործիչների նամակների ժող.: Ն.՝ որպես հեղինակի ժառանգության կարևոր մաս, հաճախ ներառվում է նրա երկերի ժող–ում: Հայտնի են Դ. Վարուժանի, Հ. Թումանյանի, Վ. Տերյանի, Ա. Իսահակյանի, Ե. Չարենցի և ուր. Ն–ները:

ՆԱՄԱՆԳԱՆ, ք. Ուզբեկստանում՝ Ֆերգանայի հովտի հս–ում, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 476 հզ. (2014): Հայտնի է XV դ–ից:

ՆԱՄԱՆԳԱՆԻ ՄԱՐԶ, վտմ Ուզբեկստանում՝ Ֆերգանայի հովտի հս–ում: Տարածքը՝ 7,4 հզ. *կմ*^{2}, բն.՝ 2,4 մլն (2014): Վարչ. կենտրոնը՝ *Նամանգան*:

ՆԱՄԴԻՆ (Nam Dinh), ք. Վիետնամում, նվինգսո Հոնհա գետի ափին, Հանամինին պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 243 հզ. (2009):

ՆԱՄԻԲ (Namib), մերձօվկիանոս. անապատ, հիմնականում՝ Նամիբիայում: Երկ.՝ մոտ 2100 *կմ*, լայն.՝ 50–130 *կմ*: Կլի-

ման օվկիանոս. անապատային է՝ ցածր ջերմաստիճաններով ու աննշան տեղումներով: Ստորերկրյա ջրերի ոչ խորը տեղադրման վայրերում հանդիպում են քսերոֆիտներ և սուկուլենտներ (ակացիաներ, հալվե ևն): Հս. Ն–ում աճում է վելվիչիայա ծառաբույսը: Կան ալմաստի և ուրանի հանքավայրեր:

ՆԱՄԻԲԵ (Namibe), ք. Անգոլայում, նվիևգատ Ատլանտ. օվկ–ի ափին, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 92,6 հզ. (2010):

ՆԱՄԻԲԻԱ, (Namibia), պետություն Հվ–արմ. Աֆրիկայում: Սահմանակից է Անգոլային, Զամբիային, Բոտսվանային և ՀԱՀ–ին: Տարածքը՝ 824,3 հզ. *կմ*^{2}, բն.՝ 2,36 մլն (2014): Մայրաքաղաքը՝ ***Վինդհուկ***: Պետ. լեզուն՝ անգլ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը: Բաժանված է 13 վարչ. մարզերի: Հավատացյալների մեծ մասը լյութերական է, կան նաև ավանդ. հավատալիքների հետևորդներ: Անդամակցում է ՄԱԿ–ին, Աֆրիկ. միությանը, ԱռտհԿ–ին ևն: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 6 հզ. ԱՄՆ դոլար է (2014): Արտահանում է ալմաստ, ուրան, ցինկ, պղինձ, խեկ–ներ, ձկնամթերք, սննդամթերք ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ նամիբյան դոլար:

Ն–ի բնակիչները (հոտենտոտներ, բուշմեններ և բանտու լեզվաընտանիքին պատկանող այլ ցեղեր) XIX դ–ի սկզբին գտնվել են տոհմատիր. կարգերի քայքայման փուլում: XIX դ–ի 60–ական թթ–ին միջցեղ. պայքարի հետևանքով ստեղծվել է հերերոների ցեղային միությունը: Եվրոպացիները (պորտուգալացի ծովագնացներ) Ն–ի ափ են իջել դեռևս 1484–ին, սակայն անապատ. երկիրը նրանց չի գրավել: 1884–ին Ն–ի տարածքը դարձել է գերմ. պրոտեկտորատ (Գերմ. Հվ–արմ. Աֆրիկա, ՀԱԱ), 1915–ին բռնազավթել է Հվ–աֆրիկ. Միությունը (ՀԱՄ, 1920–ից՝ պրոտեկտորատ): ԱՀՊ–ի ընթացքում, 1915–ին, ՀԱՄ–ն օկուպացրել է ՀԱԱ–ի տարածքը: 1920–ին նրան տրվել է ՀԱԱ–ն կառավարելու մանդատը: ԵՀՊ–ից հետո ՀԱՄ–ը (1961–ից՝ ՀԱՀ) հրաժարվել է ՀԱԱ–ի տարածքը հանձնել ՄԱԿ–ի հովանավորությանը, իսկ 1949–ին նրա տարածքը դարձրել է իր նհնգ–ը: 1960–ական թթ–ին Ն–ի ժողգ–ը Հվ–արմ. Աֆրիկայի Ժող. կազմ–յան ղեկ–յամբ մղել է անկախացման զինված պայքար: 1990–ին Ն. հռչակվել է անկախ պետություն:

ՆԱՄԻԿ ՔԵՄԱԼ (1840–1888), թուրք գրող, հաս. գործիչ: «Նոր օսմաններ» գաղտնի քաղ. կուս–յան կազմակերպիչներից, 1860–1870–ական թթ–ի Թուրքիայի սահմանադր. շարժման գործոն մասնակիցներից: Հրատարակել է սահմանադր. ուղղվածությամբ թերթեր: Հեղինակ է «Ալի բեյի արկածները» (1876), «Ջեզմի» (1880) թուրք. առաջին վեպերի, «Հայրենիքը կամ Սիլիստրեն» (1873) քննադատ. պիեսի:

ՆԱՄԻՆ Ստաս (Միկոյան Անաստաս Ալեքսեյի, ծ. 1951), կիթառահար, երգերի հեղինակ: Անաստաս ***Միկոյանի*** թոռը, Ալեքսեյ ***Միկոյանի*** որդին: Ռոք երաժշտ. խմբերի («Կախարդներ», 1964, «Քաղբյուրո», 1967, «Ծաղիկներ», 1969–75, 1980–ից՝ «Ստաս Նամինի խումբ»), Մոսկվայի երաժշտության և դրամայի թատրոնի հիմնադիր (1999), 1969–ին՝ «Ցոլքեր» խմբի կիթառահար: Հեղինակ է շուրջ 10 ազգ. հիթերի («Վաղ է հրաժեշտ տալը», «Հիմն Արեգակին», «Յուրմալա» ևն), կինոերաժշտության: Երևանում կազմակերպել է ռոք և փոփ երաժշտության միութ. ամենամեծ փառատոնը (1981): Ստեղծել է «Հայաստանի երեխաներ» հիմնադրամը (1989, ԱՄՆ):

ՆԱՄՅՈՏԿԻՆ Սերգեյ Սեմյոնովիչ (1876–1950), ռուս քիմիկոս–օրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939, թղթ. անդամ՝ 1932–ից): 2–րդ ՄՊՀ ռեկտոր (1919–24): Աշխ–ները վերաբերում են ածխաջրածինների քիմիային, նավթի քիմիային և նրա կատալիտիկ վերամշակմանը, ինչպես նաև հոտավետ նյութերի, տերպենների սինթեզին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943, 1949):

ՆԱՄՅՈՒՐ (Namur), ք. Բելգիայում՝ Սամբր և Մաս գետերի միախառնման վայրում, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 110 հզ. (2012):

ՆԱՄՈՐԱ, Նամորա Գոնսալվիշ (Namora Gonçalves), Ֆեռնանդու (1919–1989), պորտուգալացի գրող: Հեղինակ է «Կրակ խավարչտին գիշերվա մեջ» (1943), «Հաց և մոլախոտեր» (1953), «Ընդհատակում ապրողները» (1972) սոցիալ–հոգեբ. վեպերի, «Պատմություններ բժշկի կյանքից» (մաս 1, 2, 1949, 1963) ինքնակենսագր. գործերի ժող–ի, նաև նորռեալիզմի ոգով բանաստեղծությունների:

ՆԱՄՊՀՈ, ք–նվինգատ Կորեայի ԺԴՀ–ում՝ Դեղին ծովի ափին: Բն.՝ 471,1 հզ. (2010): Զարգացած է ձկնորսությունը:

ՆԱՄՊՈՒԼԱ (Nampula), ք. Մոզամբիկում, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 535 հզ. (2010): Տրանսպորտ. հանգույց է:

ՆԱՄՅՈ, Թենգրի Նոր, անհոսք լիճ Տիբեթում, Չինաստանում՝ 4627 *մ* բարձր–յան վրա: Մակերեսը՝ շուրջ 2 հզ. *կմ*^{2}, խոր.՝ մինչև 45 *մ*: Նոյեմբ–մայիս ծածկված է սառույցով: Հարուստ է ձկներով:

ՆԱՅԱԴԱՅԻՆ ՍԱՀՆՕՁ (Coluber najadum), ***ձիթապտղագույն սահնօձ***, *լորտոների* ընտանիքի օձ: ՀՀ–ում հանդիպում է մի շարք մարզերում և Երևանի շրջակայքում: Մարմնի երկ–յունը տարիքի հետ փոխվում է (20–108 *սմ*): Էգերը խոշոր են արուներից: Երբեմն խնամվում է անազատ պայմաններում, օգտագործվում է ԳՀ նպատակներով: Կծածը մարդու և կենդանիների կյանքի համար վտանգավոր չէ:

ՆԱՅԱԴՆԵՐ, գետերի, վտակների, լճերի ջրահարսներ հուն. դից–յան մեջ: Տես ***Հավերժահարսներ***:

ՆԱՅԱՌԻՏ (Nayarit), նհնգ Մեքսիկայում: Տարածքը՝ 27 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,1 մլն (2012): Վարչ. կենտրոնը՝ ***Տեպիկ***:

ՆԱՅԹԻՆԳԵՅԼ (Nightingale) Ֆլորենս (1820–1910), անգլիացի բուժքույր, հաս. գործիչ: Մեծ Բրիտանիայում ստեղծել է միջին և կրտսեր բուժանձնակազմի կադրերի պատրաստման համակարգ: Կարմիր խաչի միջազգ. ընկ–ը 1912–ին սահմանել է Ն–ի անվ. մեդալ: Հ. ***Լոնգֆելլոն*** Ն–ին է նվիրել «Սուրբ Ֆիլոմենա» պոեմը:

«ՆԱՅԻՐԻ», ազգ., գրկ–յան, արվ–ի պարբ. (1941–49, Հալեպ, 1951–83 և 1995–2013, Բեյրութ): Խմբ–ներ՝ Անդրանիկ Ծառուկյան, Ժիրայր Նաիրի (Թոսունյան):

«ՆԱՅԻՐԻ», գրահրտչ. համալիր Թեհրանում: Հիմնադրվել է 1948–ին: Պետ. արտոնագիր ունեցող միակ հայալեզու հրտչ–յունն է Իրանում: Հրատարակում է հայ., պարսկ., անգլ., ռուս. և այլ լեզուներով գրկ.: Տնօրեններ՝ Սամվել Սարուխանյան, Սեպուհ Ամիրխանյան, Նարեկ Ամիրխանյան (2011–ից):

ՆԱՅԿՎԻՍՏԻ ԲԱՆԱՁԵՎ, ջերմ. հավասարակշռության վիճակում T բացարձակ ջերմաստիճանում, R դիմադրությամբ հաղորդչի ծայրերին V լարման քառակուսու միջին արժեքը՝ $V^2 = 4RkT\Delta v$, որտեղ k–ն Բոլցմանի հաստատունն է, Δv–ն՝ հաճախությունների շերտը, որի մեջ փոփոխվում են լարվածությունների ֆլուկտուացիաները:

ՆԱՅՊՈԼ, (Naipaul) Վիդիադհար Սուրաջպրասադ (ծ. 1932), հնդիկ անգլիագիր արձակագիր: Հեղինակ է «Խորհրդավոր մերսողը» (1957), «Տուն պարոն Բիսվասի համար» (1961), «Նմանակողները» (1967), «Գետագալար» (1979), «Ժամանման գաղտնիքը» (1987), ինքնակենսագր. «Ճանապարհ դեպի աշխարհ» (1994) վեպերի, «Դրոշը կղզու վրա» (1967) վիպակների ու պատմվածքների ժող–ի և այլ գործերի:

Նոբելյան մրց. (2001):

ՆԱՅՐՈԲԻ (Nairobi), ***Քենիայի*** մայրաքաղաքը, երկրի առևտրաարդ., տրանսպորտ., քաղ. և մշակութ. կյանքի կենտրոնը: Բն.՝ 3,2 մլն (2010): Մայրաքաղաք. օկրուգ է: Ունի համալսարան, Ազգ. թանգարան, թատրոն, միջազգ. օդանավակայան: Ն–ի մերձակայքում է համանուն ազգ. պարկը: Հիմնադրվել է 1899–ին:

«ՆԱՅՐՈԲԻ», ազգ. պարկ ***Քենիայում***: Հիմնադրվել է 1946–ին: Տարածքը՝ 11,4 հզ. *հա*: Տարածված են խոտաթփուտ. սավաննաները: Հանդիպում են Թոմսոնի և Գրանտի վիթերը, այծքաղներ, վագերաձիեր, առյուծներ, ջայլամներ և այլ խոշոր կենդանիներ:

ՆԱՆԱԳՅՈՒԼՅԱՆ Սիրանուշ Գերասիմի (ծ. 1952), բուսաբան–սնկաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1997), պրոֆ. (2005): Աշխ–ները վերաբերում են ՀՀ ուտելի, թունավոր և տնտ. նշանակության սնկերի կարգաբանությանը, ֆլորիստիկային, կենսաքիմիային, նաև դրանց օգտագործմանը: Մշակել է սնկերի աճեցման նոր անթափոն տեխնոլոգիաներ: Մսկաբանների եվրոպ. ընկերակցության հիմնադիր–անդամ (2003–ից), «Էկոֆունգ» բնապահպան. ՀԿ նախագահ (2001–ից):

ԵՊՀ (2009), ՀՀ ԲՆ (2011) ոսկե մեդալներ:

ՆԱՆԱԿ (1469–1539), հնդիկ բանաստեղծ: Սիկհիզմի հիմնադիրը: Կազմավորել է սիկհերի համայնքը, եղել նրա առաջին գուրուն: Ն–ի բանաստեղծությունները զետեղվել են սիկհերի «Ադիգրանթ» սուրբ գրքում:

ՆԱՆԱՅԵՐԵՆ, ***նանայների*** լեզուն: Պատկանում է տունգուս–մանջուր. լեզվաընտանիքի հվ. (մանջուր.) ճյուղին: Գրի հիմքում լատ. (1931–37), ապա ռուս. (1937–ից) այբուբենն է:

ՆԱՆԱՅՆԵՐ (ինքնանվանումը՝ նաներ), տունգուս–մանջուր. ժողգ ՌԴ Խաբարովսկի երկրամասում (11 հզ.): Ընդհ. թիվը ՌԴ–ում՝ 12,2 հզ. (2002): Ապրում են նաև Չինաստանում (հեչժե, 4,7 հզ.): Լեզուն՝ ***նանայերեն***: Պահպանում են ավանդ. հավատալիքները:

ՆԱՆԱՍՅԱՆ Արամ Սերգեյի (ծ. 1935), SS բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1979), պրոֆ. (1991): Աշխ–ները վերաբերում են համակարգչ. ցանցերին, տեղեկատվ. համակարգի տվյալների

հավաքման, մշակման և կառավարման հարցերին: Ստեղծել է լուսանկարչ. պատկերների ինքնաշխատ մշակման համակարգեր:

ՆԱՆԴԻՆԵՐ (Rheidae), **ամերիկյան ջայլամներ**, *անողնուց թռչունների* կարգ: Բարձր.՝ մինչև 170 *սմ*: Հայտնի է 2 տեսակ՝ Հվ. Ամերիկայի խոտառատ հարթ տափաստաններում (պամպասներ) և սավաննաներում: Թխսակալում և ձագերին խնամում է արուն: 1 ենթատեսակ գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՆԱՆԵ, **Նանա**, 1. իմաստության և ողջախոհության աստվածուհին հայոց հեթանոս. կրոնում, *Արամազդի* դուստրը: Նույնացվել է հուն. *Աթենաս* դիցուհուն: 2. Հուն. դից-յան մեջ՝ նույնանուն հավերժահարս (համարվել է Սանգարիս գետի դուստրը և ծննդաբերության ոգին):

ՆԱՆԿԻՆ, ք–նվ նգստ Չինաստանում՝ Յանցզի գետի աջ ափին, Ցզյանսու նահանգ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 8,1 մլն (2013): Տրանսպորտ. հանգույց է: Արդյունահանում են երկաթի հանքաքար, քարածուխ, պիրիտներ: Հիմնադրվել է մ. թ. ա. 472–ին:

ՆԱՆՆ (Nunn) Թրևոր (ծ. 1940), անգլիացի ռեժ.: 1965–ից՝ Շեքսպիրյան թագավոր. թատրոնի ռեժ. (1968–86–ին՝ գեղ. ղեկ.): 1997–2003–ին՝ Լոնդոնի Ազգ. թատրոնի գեղ. ղեկ.: Բեմադրել է Վ. Շեքսպիրի ողբերգությունները՝ «Հռոմեացիներ» («Կորիոլան», «Հուլիոս Կեսար», «Անտոնիոս և Կլեոպատրա», «Տիտուս Անդրոնիկուս», 1972, ևն) ընդհ. անվանումով, նաև մյուզիքլներ:

ՆԱՆՆԵՐԻՆ, **Յուննին**, ք. Չինաստանում՝ Յանցզի գետի ափին՝ Գուանսի Չժուանյան ինքնավար շրջանում: Բն.՝ 6,8 մլն (2007): Ունի համալսարան, գիտամշակութ. հաստատություններ:

ՆԱՆՆՈՒՑՅԻ (Nannuzzi) Արմանդո (1925–2001), իտալացի կինոօպերատոր: Նկարահանել է «Պճնամոլ Անտոնիոն» (1960, ռեժ.՝ Մ. Բոլոնինի), «Աստվածների կործանումը» (1969), «Լյուդվիգ» (1972, երկուսն էլ ռեժ.՝ Լ. Վիսկոնտի), «Վաթեռլոո» (1970, ռեժ.՝ Ս. Ֆ. Բոնդարչուկ), «Հիսուս Նազովրեցին» (1977, ռեժ.՝ Ֆ. Ձեֆիրելլի) և այլ ֆիլմեր:

ՆԱՆՇԱՆ, լեռն. համակարգ Չինաստանում՝ Ցայդամյան գոգհովտի և Ալաշան անապատի միջև: Երկ.՝ 800 *կմ*, բարձր.՝ մինչև 6346 *մ*: Կան սառցադաշտեր: Արմ–ում գերակշռում են անապատներն ու տափաստանները, արլ–ում՝ անտառատափաստանները, ասեղնատերև անտառներն ու մարգագետինները:

ՆԱՆՈ (հուն.՝ nannos – թզուկ), նախածանց՝ սկզբն. միավորի մեկ միլիարդերորդ (10^{-9}) մասն անվանելու համար, նշանակումը՝ *n*, միջազգ.՝ n: Օր.՝ 1 *նմ* = 10^{-9} *մ*:

ՆԱՆՈԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ, էլեկտրոնիկայի բնագավառ. ընդգրկում է տարրերի 100 *նմ*–ից պակաս չափերով կառուցվածքների հիմքի վրա սարքերի ու սարքավորումների մշակումն ու ստեղծումը. հիմնված է քվանտ. էֆեկտների վրա (չափային քվանտ. էֆեկտներ, կուլոնյանաարգելափակում, բալիստիկ թռիչք ևն): Ինտեգրալ սխեմաների տարրերի չափերի փոքրացումը հնարավորություն է տվել մի բյուրեղի վրայի տրանզիստորների քանակը մեծացնել՝ դրանց թիվը հասցնելով մինչև 10^9 և ավելի, սահման. աշխ. հաճախությունը՝ մինչև 10 *ԳՀց*:

ՆԱՆՈՍՏՈՄՆԵՐ (Nannostomus), *ծածանակերպների* կարգի ձկների ցեղ: Մարմինն իլիկաձև է, երկ.՝ մինչև 6,5 *սմ*: Մի քանի տեսակներ ապրում են Հվ. Ամերիկայի հս. մասում: Աքվարիումային ձկներ են:

ՆԱՆՋԱՆ, ք. Չինաստանում, Ցզյանսի պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 5 մլն (2010): Ունի համալսարան, գիտամշակութ. հաստատություններ:

ՆԱՆՋՈՒՆ, ք. Չինաստանի Սիչուան պրովինցիայում, Նվինգստ Ցզյալինցզյան գետի ափին: Բն.՝ 6,3 մլն (2010): Նավթի արդյունահանման և նավթավերամշակման կենտրոն է: Զարգացած է մետաքսի արդ–յունը:

ՆԱՆՍԵՆ (Nansen) Ֆրիտյոֆ (1861–1930), Արկտիկայի նորվեգացի հետազոտող: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. անդամ (1898): 1888–ին առաջինն է դահուկներով հատել Գրենլանդիան, 1893–96–ին ղեկավարել է «Ֆրամ» նավով գիտարշավը: 1920–21–ին՝ Ազգերի լիգայի ռազմագերիների հարցերով գերագույն հանձնակատար: Ռուսաստանի Պովոլժիեի սովյալներին օգնության կազմակերպիչներից էր (1921): Խաղաղության Նոբելյան մրց. (1921):

Ն. կարևոր գործունեություն է ծավալել է նաև *Հայ դատի* արդարացի լուծման և հայ գաղթականների դրության բարելավման համար: Դատապարտել է սուլթան Աբդուլ Համիդ II–ի և երիտթուրքերի կազմակերպած հայերի ցեղասպանությունը: Օգնել է գաղթականներին. 320 հզ. հայ փախստականներ ստացել են *«Նանսենյան անձնագիր»*: 1925–ին եղել է Հայաստանում, մասնակցել «Շիրակի ջրանցքի» բացմանը, տեղում ուսումնասիրել փախստականներին տեղափոխելու խնդիրը, Ազգերի լիգային առաջարկել՝ «միակ տեղը, որտեղ կարելի է տեղավորել հայ փախստականներին, Սովետական Հայաստանն է», գլխավորել է հայրենադարձության հանձնաժողովը (1925–29–ին): Նա այդ մասին գրել է իր «Հայաստանում» գրքում, որը թարգմանվել է տարբեր լեզուներով՝ «Խաբված ժողովուրդ» (գերմ., 2000) վերնագրով:

ՀՀ–ում գործում է Ֆրիտյոֆ Նանսեն հիմնադրամ (նախագահ՝ Ֆելիքս Բախչինյան), բացվել է Ն–ի թանգարան (2015), տեղադրվել են Ն–ի կիսանդրիները (Երևանում և Սպիտակում), նրա անունով կոչվել է այգի՝ «Նանսենյան անձնագրի» արձանով:

ՆԱՆՍԵՆԻ ԳՈԳՀՈՎԻՏ, Հս. սառույցյալ օվկ–ի կենտր. մասում՝ հս–ում Գակկելի լ–շղթայի և Շպիցբերգենից Հս. Երկիր ձգվող մայրցամաք. լանջի միջև: Խոր.՝ մինչև 3975 *մ*: Կոչվել է Ֆ. *Նանսենի* անունով:

«ՆԱՆՍԵՆՅԱՆ ԱՆՁՆԱԳԻՐ», ժամանակավոր վկայական, որն ԱՀՊ–ից հետո տրվել է փախստականներին և քաղաքացիություն չունեցող անձանց: «Ն. ա.»–ի վերաբերյալ որոշումն ընդունվել է Ֆ. *Նանսենի* նախաձեռնությամբ՝ *Ազգերի լիգայի* հրավիրած խորհրդաժողովում (1922): Անձնագիրն ստացածներին տրվել է խորհրդաժողովին մասնակցած երկրներում ընակվելու իրավունք: «Ն. ա.» է ստացել Մեծ եղեռնից փրկված շուրջ 320 հզ. հայ:

ՆԱՆՏ (Nantes), ք–նվ նգստ Ֆրանսիայի արմ–ում՝ Ատլանտ. օվկ–ի ափին՝ Լուարի գետաբերանում, Ատլանտ. (Ներքին) Լուարի դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 281 հզ. (2012): Նավաշին. և ինքնաթիռաշին. արդ–յան կենտրոն է:

ՆԱՆՏՈՒՆ, ք. Չինաստանի Ցզյանսու պրովինցիայում, Նվինգստ Յանցզիի գետաբերանում: Բն.՝ 7,3 մլն (2010): Չինաստանի արագ զարգացող քաղաքներից է: Կան բարձր տեխնոլոգ. ձեռն–ներ:

ՆԱՆՈՒ (Nanu) Յոն Սավա (1915–մ. թ. անհտ), արվ–ի ռումին պատմաբան, հայագետ: ԱՄՆ–ի Փիլ. ընկ–յան (1970), Հռոմի «Տիբերինա» ակադ–ի (1973) անդամ: Հեղինակ է 200–ից ավելի աշխ–ների («Բենջամին Ֆրանկլին» ևն): «Հայ արվեստի ազդեցությունը Բուխարեստի XVII դ. Անթիմ վանքի վրա», «Ռումինա-հայկական գեղարվեստական կապերի պատմությունից» (ռուս., ՊՐՀ, 1964, № 3) ուսումնասիրություններում անդրադարձել է հայկ. և ռում. արվ–ների առնչություններին: Զեկուցումներով («Հայ–ռումինական արվեստի կապերը Կուրտեա դե Արճեշի միջնադարյան եկեղեցում», «Բուխարեստի հայոց տաճարը», հանդես է եկել գիտաժողովներում, աշխատակցել Ռումինիայի «Նոր կյանք» հայկ. թերթին:

ՆԱՆՈՒՇՅԱՆ Ռաֆայել Պողոսի (1924–1976), գծանկարիչ: Հեղինակ է «Կոմիտաս» (1969), «Վարդան Մամիկոնյան» (1969), «Նամակներ ռազմաճակատին» գծանկարների, թերթերի, «Մի սերնդի պատմություն» եռապատկերի, «Խաղաղություն ժողովուրդներին», «Չքվնք», «Կորչի՛ պատերազմը» և այլ պլակատների, գրքերի ձևավորումների (Րաֆֆու «Պատմվածքներ», Բ. Պրուսի «Փարավոն», հայ., ևն):

ՆԱՇՎԻԼ (Nashville), ք. ԱՄՆ–ում՝ Քամբեռլենդ գետի ափին, *Թեննեսի* նահ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 627 հզ. (2010):

ՆԱՊԱԼՄ (անգլ.՝ napalm), մածուցիկ հրկիզող խառնուրդներ: Պատրաստում են հեղուկ վառելանյութից (բենզին, կերոսին ևն) և փոշենման հատուկ փոշի–թանձրացուցիչից (օրգ. թթուների ալյումինի աղեր): Բոցի ջերմաստիճանը՝ մինչև 2000°C: Ստեղծվել է ԱՄՆ–ում 1942–ին և կիրառվել ԵՀՊ–ի ժամանակ, ավելի ուշ՝ Վիետնամում և այլուր:

ՆԱՊԱՍՏԱԿ (Lepus), համաստեղություն երկնքի Հվ. կիսագնդում՝ Էրիդան, Օրիոն, Միաեղջյուր, Մեծ Շուն, Աղավնի, Դանակ համաստեղությունների միջև: Հս. միջին լայն–յուններից երևում է աշնան վերջին և ձմռանը:

ՆԱՊԱՍՏԱԿԱՆՄԱՆՆԵՐ, կաթնասունների կարգ: Նման են *կրծողներին*: Հայտնի է 2 ընտանիք՝ *նապաստակներ* և *ծվծվաններ*: Տարածված են լայնորեն: Որոշ տեսակների մորթին ու միսն օգտագործում են: Երբեմն վնաս են հասցնում գղտ–յանը և անտառտնտ–յանը, տարածում են որոշ վտանգավոր հիվանդությունների հարուցիչներ:

ՆԱՊԱՍՏԱԿԻ ՇՐԹՈՒՆՔ, մարդու զարգացման արատ՝ վերին շրթունքի ուղղաձիգ ճեղքվածություն (մեջտեղում, մեկ կամ 2 կողմից): Երբեմն ուղեկցվում է քիմքի սերտաճման բացակայությամբ: Բուժումը վիրահատական է:

ՆԱՊԱՍՏԱԿՆԵՐ (Leporidae), *նապաստականմանների* կարգի կաթնասունների ընտանիք: Հայտնի է մոտ 50 տեսակ՝ սպիտակամորթ, գորշ Ն., վայրի ճագար, տոլայ, մանջուր. Ն. ևն: Արդյունագործ. և սպորտ. որսորդության կենդանի են: Որոշ տեսակներ կլիմայավարժեցվել են Ավստրալիայում, Նոր Զելանդիայում: 4 տեսակ գրանցված է ԲՊՄՄ Կար–

միր գրքում: Առանձին Ն. մեծ վնաս են հասցնում արոտավայրերին, այգիներին, անտառոնկիներին: Որոշ տեսակներ վարակիչ հիվանդությունների հարուցիչների տարածողներ են: ՀՀ-ում հանդիպում է 1 տեսակ՝ գորշ կամ եվրոպ. Ն.՝ բոլոր գոտիներում:

ՆԱՊՈԼԵՈՆ I, **Նապոլեոն Բոնապարտ** (Napoléon Bonaparte, 1769–1821), Ֆրանսիայի կայսր՝ 1804–14 և 1815-ի մարտ–հունիսին: Իտալիայի թագավոր՝ 1805-ին: Ծնվել է Կորսիկայի Աջինվ. ծառայությունն սկսել է 1785-ին՝ հրետանու կրտսեր լեյտ-ի կոչումով, առաջ է քաշվել XVIII դ-ի ֆրանս. հեղ-յան շրջանում (բրիգադի գեն.), *Դիրեկտորիայի* ժամանակ (բանակների հրամ.): 1799-ի նոյեմբ-ին կատարած պետ. հեղաշրջմամբ (տես *Բրյումերի տասնութ*) դարձել է առաջին *կոնսուլ*, իր ձեռքում է կենտրոնացրել երկրի ողջ իշխանությունը, ստեղծել կատարյալ ոստիկան. համակարգ (գլխավորել է ժ. *Ֆուշեն*): 1804-ին հրապարակել է «Քաղաքացիական օրենսգիրքը» (Նապոլեոնի կոդեքս): Հաղթ. պատերազմների արդյունքում ընդարձակել է կայսրության սահմանները, Ֆրանսիայից կախման մեջ է դրել Արմ. և Կենտր. Եվրոպայի պետությունների մեծ մասին:

Ն. I-ի կայսրության կործանումն սկսվել է Ռուսաստանում նապոլեոնյան զորքերի պարտությամբ (տես *Հայրենական պատերազմ 1812*): 1814-ին հակաֆրանս. դաշինքի զորքերի մուտքը Փարիզ հարկադրել է Ն. I-ին հրաժարվել գահից: Աքսորվել է Էլբա կղզի: 1815-ի մարտին նորից է տիրել գահին (տես «*Հարյուր օր*»): Վաթերլոոյի մոտ պարտությունից հետո 2-րդ անգամ է հրաժարվել գահից (22.06.1815): Կյանքի վերջին տարիներն անցկացրել է Սբ Հեղինե կղզում:

ՆԱՊՈԼԵՈՆ III, **Շառլ Լուի Նապոլեոն Բոնապարտ** (1808–1873), Ֆրանսիայի կայսր՝ 1852–70-ին: *Նապոլեոն I*-ի ազգականը: 1848-ին ընտրվել է Ֆրանսիայի հանրապետության նախագահ, պետ. հեղաշրջումից (1851-ի դեկտ.) հետո՝ 1852-ի դեկտ-ին հռչակվել է կայսր: Նրա օրոք Ֆրանսիան մասնակցել է 1853–56-ի *Ղրիմի պատերազմին*, Ավստրիայի դեմ պատերազմին (1859), Հնդկաչինի (1858–62), Սիրիայի (1860–61), Մեքսիկայի (1862–67) դեմ ինտերվենցիաներին: *Մեռանի ճապկատամարտում* (1870) գերի է հանձնվել 100-հզ-անոց բանակով. ազատվելուց հետո տեղափոխվել է Մեծ Բրիտանիա:

ՆԱՊՈԼԵՈՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ, եզրույթ, պատմ. գրկ-յան մեջ վերաբերում է *Կոնսուլության* (1799–1804) և Նապոլեոն I-ի կայսրության (1804–14, 1815) ժամանակաշրջանների Ֆրանսիայի պատերազմներին:

ՆԱՋԱՐՅԱՆ Հուսիկ Խոսրովի (1905–1994), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1972), պրոֆ. (1976): Աշխ-ները վերաբերում են XVI–XVII դդ-ի թուրք-իրան. հարաբերություններին և Հայաստանի պատմությանը:

ՆԱՋԱՐՅԱՆ Նիկոլայ Արսենի (1901–1973), քիթկոկորդականջաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1960), պրոֆ. (1961): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ: Մշակել է միջին ականջի սուր բորբոքումների և պտկաձև ելուստի բորբոքման բուժման եղանակ: Առաջարկել է օրգանիզմի՝ արյունաէոսությունը դադարեցնող (հեմոստատիկ) հատկությունների որոշման եղանակ, որը ներդրվել է բժշկության մեջ: ՀԽՍՀ ԱՆ գիտաբժշկ. խորհրդի (1944–60), Քիթկոկորդականջաբանների գիտ. ընկ-յան նախագահ:

ՆԱՋԱՐՅԱՆ Վարդգես Հակոբի (ծ. 1930), վնասվածքաբան, բարերար: ՀՀ բանակի գնդ. (1998): 1982–91-ին Գլենդելի հեռուստատեսությամբ կազմակերպել և վարել է «Առողջապահության սրահ» հայ. հաղորդաշարը: 1985-ին Երևանի վնասվածքաբանության և օրթոպեդիայի ԳՀԻ-ում ներդրել է վիրաբուժ. հոդադիտակ (արթրոսկոպ): Տիկնոջ՝ Մերի Գևորգյան-Նաջարյանի հետ հիմնադրել է «Ամերիկահայ բժիշկները մայր հայրենիքին» շարժումը: Հիմնել ու կահավորել է Ստեփանակերտի հոսպիտալի վերակենդանացման բաժանմունքը (կոչվում է Վարդգես և Մերի Ն-ների անունով), 1995-ին Երևանի կենտր. զինվ. հոսպիտալում հիմնադրել է մասնագիտացված վիրաբուժ. բաժանմունք: Վիրաբույժ-օրթոպեդների ամերիկ. ակադ-ի անդամ (1969):

ՀՀ ՊՆ «Դրաստամատ Կանայան» մեդալ (2016):

ՆԱՋԱՐՅԱՆ Քերոլան Ավետիսի (ծ. 1939), թերապևտ, բարերար: Բժշկագիտ. թեկնածու (1980): 1989-ին Բոստոնում հիմնադրել է «Հայկական առողջապահական ընկերակցություն» բարեգործ. կազմյունը (մասնաճյուղերը՝ Երևանում և Ստեփանակերտում), 1994-ին՝ Գյումրիի ընտանեկան բժշկ. օգնություն մեծահասակներին ընկերակցությունը, 1996-ին Ստեփանակերտում՝ «Արփեն» մոր և մանկան կենտրոնը: 1989-ից մարդասիր. օգնություն, դեղորայք, առողջապ. սարքավորումներ, շտապ օգնության մեքենաներ է ուղարկել աղետի գոտի և Արցախ:

ՆԱՋԱՐՅԱՆ Քրիստինե Մանվելի (ծ. 1979), սամբիստուհի: Միջազգ. կարգի վարպետ (1999), ՀՀ ս. վ. վ. (2000): Աշխարհի (1998, 2004), Եվրոպայի (1999, 2001) չեմպիոն:

ՆԱՋԱՐՈՎ Ռուբեն Ալեքսանդրի (1927–1995), հոգեբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (1965), պրոֆ.: ՌԲՌԱ թղթ. անդամ: 1982–88-ին՝ ՌԲՌԱ Հոգեկան առողջության գիտ. կենտրոնի Կլինիկ. հոգեբուժության ինստ-ի տնօրեն, 1988–95-ին՝ ՌԴ նախագահին առընթեր կառավար. ԲԿ գլխ. հոգեբույժ: Աշխ-ները վերաբերում են դանդաղընթաց և սրընթացնպաստ պատանեկան շիզոֆրենիայի կլինիկային, հոգեկան խանգարումների բուժմանը և հոգեդեղարան. միջոցների ազդեցությամբ առաջացող կլինիկ. պատկերի ձևափոխությանը, կենսբ. հոգեախտաբանությանը: ԱՀԿ հոգեկան հիվանդությունների դասակարգման գծով փորձագետ և շիզոֆրենիայի հետազոտության կենտրոնի ղեկ.:

ՆԱՌ, *ուղղերի* հիբրիդ: Ստացվում է *դրոմեդարի* և *բակտրիանի* տրամախաչումից, զանգվածեղ ուղտեր են:

ՆԱՍԱ (անգլ.՝ NASA – National Aeronautics and Space Administration), ԱՄՆ *Օդագնացության և տիեզերական տարածության հետազոտությունների ազգային վարչության* տարածված անգլ. համառոտագրությունը:

ՆԱՄԻԲՅԱՆ–ԷՔՄԵՔՉՅԱՆ Ագապի (ծ. 1929), պատմաբան: Փիլ. գիտ. դ-ր (1981): Մեծ Բրիտանիայի ակադ-ի անդամ (2002, Լոնդոն): Հեղինակ է «Բրիտանիան և Հայկական հարցը. 1915–1923» (անգլ.՝ 1984, հայ.՝ 1994) աշխ-յան. կազմել է եվրոպ. և մասնավորապես՝ անգլ. արխիվների նյութերի հիման վրա:

ՆԱՄԻԲՈՎ Նիկոլայ Նասիբովիչ (1929–1996), ռուս. մարզիկ և մարզիչ (ձիասպորտ): Հաղթել է 15 դերբիում՝ մրցարշավաշրջանի գլխ. մրցություններում: Եվրոպայի մրց-ի եռակի հաղթող (1965–67):

ՆԱՄԻՉԵ Սուլխան Իվանի (1927–1996), վրացի կոմպոզիտոր: ՎԽՍՀ ժող. արտիստ (1979): Հեղինակ է «Օրփեոս և Եվրիդիկե» (1973) բալետի, «Ուսանողներ» (1965) օպերետտի, նաև օրատորիայի, 5 սիմֆոնիայի, գործիք. կոնցերտների, «Աղոթք» խմբերգ., «Վրացական ժողովրդական պոեզիայից» վոկալ շարքերի: ՎԽՍՀ (1973), ԽՍՀՄ (1986) Պետ. մրց-ներ:

ՆԱՄԻՄԻ, **Նեսիմի** (Սեիդ Իմադեդդին, մոտ 1369–1417), պարսիկ բանաստեղծ: Գրել է թուրք., պարսկ. և արաբ.: Եղել է գազելի, ռուբայիների, տույուգի վարպետ: Հայ. հրատարակվել է «Հատընտիր» (1973) ժող-ը:

ՆԱՄԻՐ ԽՈՍՐՈՎ, **Նասիր Խուսրավ Աբու Մուին** (1004–1072–ից հետո), պարսիկ բանաստեղծ, փիլ., կրոն. գործիչ: Հեղինակ է կրոնափիլ. տրակտատների, բեյթերի դիվանի (11 հզ.), «Ռովշանայն-նամե» (1053) պոեմի:

ՆԱՄԻՐԻ Կայում (Գաբդելկայում Գաբդելնասիրովիչ Նասիրով, 1825–1902), թաթար գիտնական-լուսավորիչ, գրող: Կազմել և հրատարակել է թաթար-ի քերակ-ը, նաև դասագրքեր, բառարաններ: Հեղինակ է «Կազանի թաթարների հավատալիքներն ու ծեսերը» (1880), «Կազանի թաթարների ժողովրդական գրականության նմուշներ» (երկուսն էլ՝ ռուս., 1896) գրքերի, նաև նովելների, վիպակների («Ավիցեննա», 1872):

ՆԱՄՈՆՈՎ Դմիտրի Նիկոլաևիչ (1895–1957), ռուս. բջջաֆիզիոլոգ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1943), ԲԳԱ ակադ. (1945): Ն. Վ. *Նաամնովի* որդին: Առաջարկել է վնասման և գրգռման սպիտակուց. տեսությունը, «պարանեկրոզ» հասկացությունը: Ապացուցել է պարաբիոզի ժամանակ կառուցվածք. և ֆունկցիոնալ փոփոխությունների միասնությունը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1943):

ՆԱՄՈՆՈՎ Նիկոլայ Վիկտորովիչ (1855–1939), ռուս. կենդանաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ (1906), ՌԳԱ (1917), ԽՍՀՄ ԳԱ (1925) ակադ.: Դ. Ն. *Նաամնովի* հայրը: Աշխ-ները վերաբերում են կենդանիների (առավելապես՝ անողնաշարների) ձևաբանությանը, կարգաբանությանը և էկոլոգիային: Բայկալ լճի համալիր ուսումնասիրության նախաձեռնողն է (1916):

ՆԱՍՏԻԱՆԵՐ, բույսերի տերևների, ծաղկաթերթիկների և այլ օրգանների շարժումները՝ ի պատասխան արտաքին միջավայրի գործոնների (լույս, ջերմաստիճան ևն) փոփոխությունների: Տարբերում են լուսանաստիաներ, ջերմանաստիաներ, նիկիտինաստիաներ, սեյսմոնաստիաներ, քեմոնաստիաներ:

ՆԱՄՐ ԷԴ ԴԻՆ ՇԱՀ (1831–1896), Իրանի շահ՝ 1848-ից՝ Ղաջար. հարստությունից: Իրականացրել է տնտ-յան և հաս. կյանքի արդիականացման քաղ-յուն: 1856–57-ին Մեծ Բրիտանիայի դեմ վարել է անհաջող պատերազմ: Սպանել են ահաբեկիչները: Ն. Է. Դ. շ. հայերին շնորհել է անձի, գույքի ապահովության, դավանանքի ազատության, դպրոցներ բացելու արտոնություններ:

ՆԱՄՐԵԴԴԻՆ Թ-ՈՒՍԻ Աբու Ջաֆար Մուհամմեդ իբն Մուհամմեդ իբն Հասան

Բաքր (1201–1274), պարսիկ գիտնական-հանրագիտակ, պետ. գործիչ: 1256–ից եղել է *Հուլավու խանի* խորհրդականն ու դպիրը: Ն. Թ–ի ղեկավարությամբ կառուցվել է ***Մարաղայի աստղադիտարանը***, կազմվել են աստղացուցակներ: Հեղինակ է «Մենկնություն Էվկլիդեսի», «Տրակտատ ամբողջական քառանկյան մասին», նաև երկրբ–յանը, բժշկությանը, տրամաբ–յանը, բարոյագիտ–յանը, պոեզիային վերաբերող աշխ–ների:

ՆԱՍՈՒՀ (Nasuh, Նասուհ ալ–Սիլյահի ալ–Մատրակչի, մոտ 1517–1564), թուրք մանրանկարիչ, պատմաբան: Ստեղծել է մանրանկարների, պատկերազարդումների շարք՝ նվիրված Սուլեյման I Կանունի սուլթանի՝ 1534–36–ին Իրաք և Իրան կատարած ռազմ. արշավանքներին: Նկարազարդել է «Սուլթան Բայազիդ II–ի պատմությունը», «Սուլեյման–նամե» գրքերը:

ՆԱՎ, լողացող կառուցվածք՝ ուղևորների ու բեռների փոխադրման, ջր. արդյունագործության, օգտ. հանածոների արդյունահանման, մարզ. մրցույթների ևն, ինչպես նաև ռազմ. նպատակների համար: Ն–երը լինում են **ինքնագնաց** (ջերմանավեր, շոգենավեր, գազատուրբանավեր, էլեկտրանավեր, ատոմանավեր) և **ոչ ինքնագնաց** (քարշարկվող, առագաստ., թիավոր), **վերջրյա** (ջրատարվող, սահող, ստորջրյա թևերով, օդաբարձով) և **ստորջրյա**: Բաց ծովում Ն. լողում է պետ. դրոշի ներքո (որ նվիրագստ–ում այն գրանցված է): Տես նաև *Ռազմանավ*:

ՆԱՎ, **նեֆ** (ֆրանս.՝ nef, < լատ. navis – նավ), ճարտ–յան մեջ՝ ***բազիլիկի***, քրիստ. տաճարի և այլ շինությունների ինտերիերի մաս՝ 1 կամ 2 երկայն. կողմերից սահմանափակված սյունաշարով (մույթաշարով):

ՆԱՎԱԲԵԿՈՒԹՅՈՒՆ, *նավի* կործանումը ուժեղ վնասվածքներից, որոնք առաջանում են բնական (փոթորիկներ, սառցակույտեր ևն) և տեխնածին (տեխ. վնասվածքներ, արկի հարված ևն) պատճառներից: Խոշորագույն Ն–ներ են «Բեռլին» (1907), «Տիտանիկ» (1912), «Ծովակալ Նախիմով» (1986) նավերի կործանումները:

ՆԱՎԱԳԱ (Eleginus gracitis), ձողաձկների ընտանիքի ծով. ձուկ: Երկ.՝ մինչև 47 *սմ*, կ. զ.՝ մինչև 700 *գ*: Հանդիպում է Կոլայի ծովածոցից մինչև Օբի ծովախորշ, ապա մտնում գետաբերան: Մոտիկ տեսակը Հեռավոր Արևելքում վախնյան է: Արդյունազործ. ձուկ է:

ՆԱՎԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ, 1. գիտ–յուն նավերի, թռչող սարքերի (օդ. Ն.՝ ներառնավագնացություն) և տիեզ. ապարատների (տիեզ. Ն.) համար ճանապարհների ընտրության և դրանք վարելու եղանակների վերաբերյալ: Խնդիրներն են՝ լավագույն երթուղու (հետագծի), շարժվող օբյեկտի տեղադիրքի, ուղղության ու արագության և այլ հարաչափերի որոշումը: Ն–յան մեջ օգտագործում են աստղագիտ., ռադիոտեխ. և այլ մեթոդներ: 2. Ժամանակաշրջան, երբ տեղ. կլիմ. պայմանները հնարավորություն են տալիս իրականացնել ծովագնացությունը:

ՆԱՎԱԽԵՑ, 1. (լատ.՝ Puppis) համաստեղություն երկնքի Հվ. կիսագնդում՝ Միահեղյուր, Մեծ Շուն, Աղավնի, Կենդանագիր, Ողնուց, Առագաստ, Կողմնացույց, Հիդրա համաստեղությունների միջև: Հվ. լայն–յուններից երևում է աշնան վերջին և ձմռանը: 2. Նավի հետնամասը. հակադիր է քթամասին՝ նավացռուկին:

ՆԱՎԱԽԵՑԻՆԵՐ (Nautilus), գլխոտանի փափկամարմինների ցեղ: Խեցին պարուրաձև է (տրամագիծը՝ 15–23 *սմ*)՝ 35–38 խցիկների բաժանված: Հայտնի են 3–6 ժամանակակից տեսակներ՝ Հնդ. օվկ–ի արլ. և Խաղաղ օվկ–ի արմ. մասերում: Ուտելի են: Խեցիների սադափն օգտագործում են զարդեր պատրաստելու համար:


ՆԱՎԱԿԱՏԻԿՅԱՆ Ալեքսանդր Հովհաննեսի (ծ. 1925), հիգիենիստ: Բժշկ. գիտ. դ–ր (1962), պրոֆ. (1965): ՌԲԳԱ թղթ. անդամ (1988): Հովհաննես *Նավակատիկյանի* որդին: Աշխ–ները վերաբերում են աշխ–ի հիգիենային և ֆիզիոլոգիային, նյարդահուզ. բարձր լարվածության, աշխատունակության և առողջ. վիճակի կանխատեսման նպատակով մասնագիտ. հիվանդությունների մաթ. մոդելավորմանը: Ուկրաինայի հայերի միության պատվ. նախագահ (2001–ից):

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան:

ՆԱՎԱԿԱՏԻԿՅԱՆ Հովհաննես Ալեքսանդրի (1908–1952), ֆիզիկոս, մաթեմատիկոս, մանկավարժ: Պրոֆ. (1930): Ալեքսանդր *Նավակատիկյանի* հայրը: 1921–ից աշխատել է ԵՊՀ–ում. 1933–38–ին՝ ընդհ. ֆիզիկայի ամբիոնի առաջին վարիչը, 1933–35–ին՝ պրոռեկտոր: 1938–ին բռնադատվել է և աքսորվել: 1944–51–ին՝ Հս–սեթ. մանկավարժ. ինստ–ի (ք. Վլադիկավկազ) ֆիզիկայի ամբիոնի վարիչ: Աշխ–ները վերաբերում են էլեկտրացույցի և որոշ մարմինների էլեկտրականացման պայմանների ուսումնասիրությանը:

ՆԱՎԱԿԱՏԻՔ, **նավակատիկ**, կրոն. իմաստով՝ նորաշեն տաճարի, եկեղեցու, լայն իմաստով՝ տան, ամեն նորի բացման, տարեդարձի ու նվիրագործության հանդես: Ն. է նոր ավարտված եկեղեցու առաջին նվիրագործությունը, նաև նվիրագործության տարեդարձը: ՀԱԵ–ն Ն–ները կատարում է մեծ տոների նախընթաց օրերին՝ շաբաթապասի վերջին: Որպես առանձին տոն՝ նշվում է Խաչվերաց տոնի նախընթաց շաբաթ օրը:

ՆԱՎԱՀԱՆԳԻՍՏ, ափի տեղամաս՝ հարակից ջր. տարածությամբ, կառույցների ու հարմարանքների համալիրով, որը նախատեսված է նավերի կառանման, սպասարկման, բեռնման–բեռնաթափման և այլ գործողությունների համար: Տարբերում են ծով. (սպասարկում է ծով. նավագնացությունը) և գետ. (ներքին ջր. ուղիների) Ն–ներ:



Խոշոր նավահանգստի սխեմա. 1. նավահանգստի ջրատարածք, 2. նավահանգստի տարածք, 3. ալեբեկիչներ, 4. ծովապատնեշ, 5. երկկողմանի նավամատույցներ, 6. առափնյակ, 7. ջրավազաններ, 8. փարոս, 9. նավահանգստային կրակներ, 10. նախանավահանգստային երկաթուղային կայարան

ՆԱՎԱՀՈ ԼԵԶՈՒ, աթապասկյան լեզվաընտանիքի լեզու: ԱՄՆ–ի և Կանադայի հնդկաց. լեզուների մեջ ամենից շատ կրողներ ունեցող լեզուն է: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՆԱՎԱՄԲԱՐ, զետեղարան նավի իրանի մեջ՝ ներքևի տախտակամածի և նավահատակի կամ 2–րդ հատակի միջև: Ն–ում դրվում են բեռներ (բեռն. Ն.), նավ. մեխանիզմներ (մեք. Ն.), պաշարներ ևն:

ՆԱՎԱՄԲԱՐՁԻՉ, նավերը նավատար խցում մի մակարդակից մյուսը տեղափոխելու կառույց: Լինում են փոխադր. Ն–ներ (թեք և ուղղաձիգ)՝ ներքին ջրուղիներում (ջրէկներին կից), և նավամբարձ կառույցներ (նավերի բարձրացման և իջեցման համար)՝ նավաշին. և նավանորոգման ձեռն–ներում (օր.՝ չոր նավանորոգման գետնափոսեր, հանգարներ, սահահարթակներ):

ՆԱՎԱՄՈԴԵԼԱՅԻՆ ՍՊՈՐՏ, մարզաձև. ներառում է նավերի ինքնագնաց, ռադիոկառավարվող և այլ մոդելների նախագծումն ու կառուցումը՝ մարզ. մրցումների համար:

ՆԱՎԱՆՈՐՈԳԱՐԱՆ, 1. նավամբարձիչ շինություն ծովի, գետի կամ լճի ափին՝ նավերի կառուցման, նորոգման, տեղափոխման և ջրարկման համար: Լողացող Ն. հենարաններով ուղղանկյունաձև կամրջանավ է (նավը ներս բերելու համար ջրածածկվում է):

ՆԱՎԱՆՆՈՒՄԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ, հիդրոտեխ. կառույցներ՝ հիդրոհանգույցներում և նավարկելի ջրանցքներում՝ նավերով ջրանկման մակարդակները հաղթահարելու համար: Ն. կ. են նավարկային ջրարգելակները և տրանսպորտ. նավամբարձիչները:

ՆԱՎԱՇԻՆ Սերգեյ Գավրիլովիչ (1857–1930), բույսերի ռուս. բջջաբան և սաղմնաբան, գիտ. դպրոցի հիմնադիր: ՌԳԱ (1918), Ուկր. ԳԱ (1924), ԽՍՀՄ ԳԱ (1925) ակադ.: Բացահայտել է (1898) ծածկասերմ բույսերի կրկնակի բեղմնավորումը: Դրել է քրոմոսոմների ձևաբանության և կարիոկարգաբանության հիմքերը:

ՆԱՎԱԱՐԴԱՆՄԱՆՆԵՐ, **նաուտիլոիդներ** (Nautiloidea), գլխոտանի փափկամարմինների դասի ծով. անողնաշարների ենթադաս (կամ վերնակարգ): Հայտնի է մոտ 2 հզ. տեսակ. առաջացել են քեմբրում, զարգացել են օրդովիկում և սիլուրում, ներկայում պահպանվել են միայն ***նավաորդերը***: Ունեցել են արտաքին խեցի: Ուղեցույց բրածոներ են՝ ստորին պալեոզոյան նստվածքներում:

ՆԱՎԱԱՐՈՂԵՐ, **շաղափուկներ, նաուտիլուսներ**, գլխոտանի փափկամարմինների սեռ: Խեցին պարուրաձև է (տրամագիծը՝ 15–23 *սմ*)՝ բաժանված 35–38 խցիկների: Պահպանվել են 3–6 ժամանակակից տեսակներ՝ Հնդ. օվկ–ի արլ. և Խաղաղ օվկ–ի արմ. մասերում: Ուտելի են: Խեցու սադափն օգտագործում են զարդեր պատրաստելիս:

ՆԱՎԱՍՄԱՐ, Տապանասար, *Կապուտջուղի* արմ. կողմի լ–զագաթը: Բարձր.՝ 3906 *մ*: Լանջերից սկիզբ է առնում Մեսրոպավան գետակը: Մերձակա լեռները հեթանոս. շրջանում եղել են պաշտամունքի վայրեր: Ավանդության համաձայն՝ Ն–ի ստորոտում Մեսրոպ Մաշտոցն իր աշակերտների հետ շուրջ 17 տարի բնակվել է: Կռնակոչի անձավներից մեկում, որն անվանվել է «Մեսրոպ Մաշտոցի անձավ»: Պահպանվել են ժայռապատկերներ:

ՆԱՎԱՍԱՐԴ (հինհնդ.՝ նավա–սարատա, իրան.՝ նավասարհատու – նոր տարի), հինհայկ. տոմարի 1–ին ամիսը: Հաջորդել է տարվա վերջին Ավելյաց կոչվող տոն.

5 օրերին: Ն–ի 1–ին օրը (համապատասխանել է օգոստ. 11–ին) համարվել է հայոց քաղ. և սրբազան տարեգլուխը՝ *Ամանորը*: Տարեմուտի տոնահանդեսներն ուղեկցվել են համաժող. խաղերով և մրցություններով, որոնք հայտնի են «նավասարդյան խաղեր» անվանումով:

ՆԱՎԱՍԱՐԴ ԱՌՆՋԵՅԻ, XVII դ–ի ճարտ.: 1651–ին Թիֆլիսի հայ մեծահարուստ Խոջա Բեյբուտի պատվերով նորոգել է Հաղպատի վանքի գլխ. և հնագույն Սբ Նշան եկեղեցին (976–991), վերականգնել հսկայածավալ գմբեթի գմբեթակիր հվ. կամարը:

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ Անահիտ Վլադիմիրի (1957–1998), ճարտ.: Համահեղինակ է Հերոսների ծառուղու և Անհայտ զինվորի գերեզմանի (Երևանի Հաղթանակի զրոսայգի, 1985), կայարանամերձ հրապարակի վերակառուցման (1980), Գյումրիի Անի թաղամասում մանկ. պոլիկլինիկայի (1991) նախագծերի ևն:

ՀԼԿԵՄ մրց. (1986), Երիտասարդ ճարտ–ների հանրապետ. ստուգատեսի դափնեկիր (1986):

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ Աշոտ Յոլակի (1950–1997), հաս–քաղ. գործիչ: ՀՀԿ հիմնադիր–նախագահը (1990–ից): 1968–ից անդամակցել է Ազգ. միացյալ ընդհատակյա կուս–յանը: Դատապարտվել է շուրջ 12 տարվա ազատազրկման: Հիմնադրել ու ղեկավարել է «Անկախության բանակ» ռազմաքաղ. կազմ–յունը (1989), որը մասնակցել է ՀՀ սահմանամերձ շրջանների պաշտպ–յան և Արցախի ազատագրության մարտերին:

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ Բագրատ Աբրահամի (1862–1934), բժիշկ, հաս. գործիչ: Մասնակցել է 1877–78–ի ռուս–թուրք. պատերազմին (*Կովկասյան ռազմաճակատում*), բժշկ. օգնություն ցուցաբերել հայ գաղթականներին: 1880–ին Թիֆլիսում բացել է Կովկասում 1–ին անվճար բուժարանն աղքատների համար: 1881–ին հիմնադրել է *Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը* (եղել է անփոփոխ պատվ. նախագահը):

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ Բորիս Սերգեյի (ծ. 1957), լրագրող, խմբ.: 2002–06–ին՝ Բաց հաս–յան ինստ–ի հայաստանյան մասնաճյուղի տնօրենների խորհրդի նախագահ: 1990–91–ին՝ Արմենֆաքս լրատվ. գործակալության գլխ. խմբ.: 1990–95–ին՝ *«Ձեռկայո»* շաբաթաթերթի հիմնադիր–խմբ.: 1995–ից՝ *Երևանի մամուլի ակումբի* նախագահ, 2001–ից՝ «Հարավային Կովկաս» լրագրողների միջազգ. ընկերակցության համանախագահ:

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ Լիպարիտ Հայրապետի (ծ. 1940), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դ–ր (2003), պրոֆ. (2004): Աշխ–ները վերաբերում են ծայրահեղ իրավիճակներում (ազոտային քաղց, ջերմաշոկ, ռենտգեն. ինտենսիվ ճառագայթում, բարձր ջերմաստիճան և իոնացնող ճառագայթում) խմորասնկային բջիջներում կատարվող կենսաքիմ. որոշ կենսընթացներին:

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ Սվետլանա Հովհաննեսի (ծ. 1946), դաշնակահարուհի: ՀՀ ժող. արտիստ (1984): ԵՊԿ պրոֆ. (1989): 1966–ից՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի մենակատար: Նվագացանկում՝ Յ. Ս. Բախի, Լ. վան Բեթհովենի, Ռ. Շումանի, Պ. Հինդեմիթի, Դ. Դ. Շոստակովիչի, Ա. Խաչատրյանի, Ա. Բաբաջանյանի, Գ. Հովունցի, Տ. Մանսուրյանի և ուր. երկեր: Համերգներով հանդես է եկել արտերկրում, մասնակցել միջազգ. փառատոների:

Ռ. Շումանի (1966), Յ. Ս. Բախի (1972, երկուսն էլ՝ Գերմանիա) անվ. միջազգ. մրցույթների, Եղիսաբեթ թագուհու (1972, Բրյուսել), ՀԼԿԵՄ (1970) և ՀՀ Պետ. (1988) մրց–ների, ՀՀ «Մովսես Խորենացի» (2003) մեդալ, «Սբ Մեսրոպ Մաշտոց», ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» (երկուսն էլ՝ 2010), ՀՀ «Պատվո նշան» (2016) շքանշաններ:

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ Տիգրան Ավետիսի (1861–1927), բանահավաք–հրտ., բառարանագիր: 1879–ին դատապարտվել է 6–ամսյա բանտարկության Մետեխի բանտում՝ Միքայել *Նալբանդյանի* նկարը «Ազատություն» բանաստեղծության հետ տպելու և տարածելու համար: 1876–ից Ն. հավաքել և գրառել է Վաղարշապատի բանահյուս. նյութերը, որոնք ամփոփել է «Հայ ժողովրդական հէքիաթներ» (գիրք 1–10, 1882–1903), «Հայ ժողովրդական աւանդութիւններ» (1883) ժող–ներում: Կազմել է «Անեծքներ» (1883) ժող–ը, «Բառգիրք Արարատեան բարբառի» (1903) բառարանը:

ՆԱՎԱՍՅԱՆ Ստեֆանի Սամուելի (ծ. 1954), երգչուհի: ԱՄՆ–ում 1980–ական թթ–ին հանդես է եկել Ջոն Հենդրիկսոնի խմբում: Մասնակցել է միջազգ. փառատոների: «Գրեմմի» մրց. (կրկնակի):

ՆԱՎԱՏՈՐՄ, նավերի և լողամիջոցների ընդհ. անվանումը: Ըստ պատկանելության՝ տարբերում են ռազմածով., ծով. (փոխադրամիջոց., արդյունագործ., արշավախմբային), գետ., ըստ էներգետիկ. տեղակայանքների՝ ատոմ., շոգու, թիավարման, առագաստ., ըստ տեղաբաշխման՝ Խաղաղօվկիանոս. ևն: «Ն.» եզրույթն օգտագործում են նաև ավիացիայի և ավիացիոն միավորումների համար (օր.՝ Քաղաքաց. օդ. Ն.): Խոշոր պետությունների ՌԾՆ (ՌԾՈՒ) նախատեսված է օվկիանոս. (ծով.) մարտ. գործողություններ վարելու համար: Կազմված է տարբեր ուժերի տեսակների՝ սուզանավերի, վերջրյա նավերի, ծով. ավիացիայի, ծով. հետևակի միավորումներից, իսկ որոշ պետություններում՝ նաև ափային հրթիռահրետան. զորքերի միավորում: ՌԾՆ ղեկավարում է գլխ. հրամ–ը: Նրա կազմում ընդգրկված են նաև կառավարման այլ մարմիններ, տարբեր ծառայություններ (թիկունքի, կապի, սպառազինության, նավանորոգման ևն):

ՆԱՎԱՏՈՐՄԻՉ, 1. ՌԾՆ խոշոր միավորում: Լինում են ծով., գետ., լճային: Կարող են լինել առանձին կամ որևէ նավատորմի կազմում: 2. Արդ., ԳՀ կամ սպորտ. նավերի միավորում:

ՆԱՎԱՐԿՈՒՀԻ, **ֆարվատեր** (հոլ.՝ varwater, < varen – լողալ և water – ջուր), նավագնացության առումով անվտանգ ջրանցուղի: Նշվում է խարսխավոր լողանով, ազդալողանով, ուղեգծանշաններով:

ՆԱՎԹ, դյուրավառ յուղանման հեղուկ՝ տարածված Երկրի նստվածք. թաղանթում: Կարևորագույն օգտ. հանածո: Ալկանների, որոշ ցիկլոալկանների և արենների, ինչպես նաև թթվածին, ծծումբ ու ազոտ պարունակող միացությունների խառնուրդ է: Լինում է բաց շագանակագույնից (գրեթե անգույն) մինչև գորշ, գրեթե սև:

Տարբեր հանքավայրերից ստացվող Ն–ի բաղադրությունն ու ֆիզքիմ. հատկությունները տարբեր են: Տարբերում են թեթև (0,65–0,87 *գ/սմ*^{3}), միջին ծանրության (0,871–0,910 *գ/սմ*^{3}) և ծանր (0,910–1,05 *գ/սմ*^{3}) Ն–եր: Այրման ջերմությունը՝ 43,7–46,2 *ՄՋ/կգ* (10400–11000 *կկալ/կգ*): Ն. դասակարգում են ըստ ծծմբի պարունակության՝ քիչ ծծմբային (մինչև 0,5 % S), ծծմբային (0,5–2 % S) և շատ ծծմբային (2 %–ից ավելի S): Ն. օգտագործում են հին ժամանակներից (մ. թ. ա. VI հզ–ամյակից):

Ն–ի թորմամբ ստանում են բենզին, ռեակտիվ և դիզել. վառելանյութեր, կերոսին, մազութ: Ն–ի համաշխ. պաշարները ավելի քան 130 մլրդ *տ* են: Ն–ի ամենամեծ պաշարները Սաուդյան Արաբիայում են, Քուվեյթում, Իրանում, Իրաքում:

ՆԱՎԹ ԱՐՏԱՀԱՆՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՕՊԵԿ, անգլ.՝ Organization of Petroleum Exporting Countries – OPEC), միջազգ. միջկառավար. կազմ–յուն: Ստեղծել են նավթարդյունահանող երկրները 1960–ին՝ նավթի արդյունահանման սահմանաչափերը վերահսկելու նպատակով: Անդամներն են Ալժիրը, Անգոլան, ԱՄԷ–ն, Գաբոնը, Էկվադորը, Իրանը, Իրաքը, Լիբիան, Նիգերիան, Սաուդյան Արաբիան, Վենեսուելան, Քաթարը, Քուվեյթը: Վերահսկում է նավթի համաշխ. պաշարների մոտ 2/3–ը (2016): Կենտրոնատեղին՝ Վիեննայում:

ՆԱՎԹԱԼԻՆ, արոմատիկ ածխաջրածին, բնորոշ հոտով անգույն բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 80,3ºC: Պարունակվում է քարածխի խեժում և նավթում: Կարևոր հումք է քիմ. արդ–յան մեջ. կիրառվում է շատ օրգ. ներկանյութերի, ֆտալաթթվի անհիդրիդի, տետրալինի, դեկալինի, նավթալինի տարբեր ածանցյալներ սինթեզելու համար:

ՆԱՎԹԱԿՈՒՔ, պինդ նյութ. ստացվում է նավթավերամշակման հեղուկ մնացորդները և ձյութը հատուկ վառարաններում կոքսացնելով: Ն. առաջանում է նաև նավթաթորման նյութերի կրեկինգի և պիրոլիզի ժամանակ: Օգտագործվում է էլեկտրոդներ պատրաստելու համար:

ՆԱՎԹԱՄԹԵՐՔ, ածխաջրածինների խառնուրդներ, ինչպես նաև առանձին քիմ. միացություններ, որոնք ստացվում են *նավթից* և *նավթագազերից*: Ն. օգտագործում են որպես վառելանյութեր, քսուքներ, լուծիչներ, էլեկտրամեկուսիչ միջավայր, նավթաքիմ. հումք:

ՆԱՎԹԱՄՈՒԶ, կառույցների համալիր՝ նավթը և նրա վերամշակման արգասիքները հանույթի կամ արտադրման վայրից սպառման կամ փոխադրեռնման (երկթղ. կամ ջր. տրանսպորտի) կետեր տեղափոխելու համար: Ն. կազմված է ստորգետնյա կամ ստորջրյա խողովակաշարից, գծային ամրանից, նավթավերամղման գլխամաս. ու միջանկյալ պոմպակայաններից, նավթամբարից, գծային և օժանդակ կառույցներից:

ՆԱՎԹԱՅՈՒՂԵՐ, բարձրաեռ ածխաջրածինների ($t_{եռ.}$՝ 300–600ºC) հեղուկ խառնուրդներ: Ստանում են *նավթի* թորմամբ կամ *գուդրոնից* անցանկալի բաղադրամասերի հեռացմամբ: Օգտագործում են որպես սպիտակ, կոնսերվացման, յուղման, տեխնոլոգ. և մեկուսացման յուղեր: Ն–ի հիմքի վրա ստանում են պլաստիկ և տեխնոլոգ. քսուքներ, քսուքասաոեցնող և հիդրավլիկ. հեղուկներ:

ՆԱՎԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ծանր արդ–յան ճյուղ. ընդգրկում է նավթի և գազի հանքավայրերի հետախուզումը, հորատումը, նավթի և նավթագազերի

(ուղեկցող) արդյունահանումը, վերամշակումը, նավթի խողովակաշար. տրանսպորտը ևն:

ՆԱՎԹԱՔԻՄԻԱԿԱՆ ՍԻՆԹԵԶ, նավթից և ածխաջրածնային գազերից սինթեզով քիմ. նյութերի ստացումը: Նավթի, նավթագազերի և բնական այրվող գազերի հիմքի վրա ստանում են սինթետիկ կաուչուկներ, մանրաթելեր, պլաստմասսաներ, մոնոմերներ, լվացամիջոցներ, մի շարք օրգ. նյութեր, ներկանյութեր, գղտ. թունանյութեր, վառելանյութեր, քսայուղեր, սպիտակուցավիտամին. խտանյութեր ևն:

ՆԱՎԹԵՆԱԹԹՈՒՆԵՐ, ածխածնի 5 ատոմներից բաղկացած 1 կամ մի քանի օղակներ՝ նավթենային ռադիկալներ, պարունակող կարբոնաթթուներ: Մեծ մասամբ միահիմն են: Ն.՝նավթի թթվածին պարունակող հիմն. բաղադրիչներն են: Անգույն, մածուցիկ հեղուկներ են, եռում են 220–300°C-ում, պնդանում՝ 80°C-ից ցածր ջերմաստիճանում: Լուծվում են միայն նավթանյութերում և այլ օրգ. լուծիչներում: Ն. օգտագործում են սահմանափակ (նավթի ապաէմուլգում, կոճափայտերի ներծծում ևն), աղերը՝ բուրդը լվանալու, փայտը, գործվածքը և ճոպանները փտումից պաշտպանելու համար, նաև որպես էմուլգարար և ախտահանիչ:

ՆԱՎԹԵՆՆԵՐ (< հուն. naphtha – նավթ), նավթում պարունակվող հագեցած ալիցիկլիկ ածխաջրեր: Կարևորագույններն են ցիկլոպենտանը, ցիկլոհեքսանը և դրանց հոմոլոգները:

ՆԱՎԹՈԼՆԵՐ, հիդրօքսինավթալիններ, նավթալին. շարքի ֆենոլներ: Առավել կարևոր են α- և β-մոնոնավթոլները՝ $C_{10}H_7OH$: Անգույն բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 96,1°C և 122°C: Կիրառում են ազոներկանյութերի, հոտավետ նյութերի, կաուչուկի կայունարարների և ռետինի արտադր-յան մեջ:

ՆԱՎԻԵ (Navier) Լուի Մարի (1785–1836), շինմեխանիկայի ոլորտի ֆրանսիացի ճարտարագետ-գիտնական: Աշխ-ները վերաբերում են նյութերի դիմադրությանը, առաձգականության տեսությանը, հիդրավլիկային և հիդրոմեխանիկային: Արտածել է (1822) անսեղմելի մածուցիկ հեղուկի շարժման՝ Ն–Ստոքսի հավասարումը:

ՆԱՎԻՇԻ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ ԱՆԱՊԱՏ, XI–XII դդ–ի ճարտ. համալիր Վասպուրականի Գողթն գվո-ում՝ Տևի գ–ից 4 *կմ* հվ–արլ. (այժմ՝ Նախիջևանի Օրդուբադի շրջանում): Եկեղեցին ուղղանկյուն պարսպի կենտրոնում է: Պահպանվել են 1 զույգ մույթերով բազիլիկ եկեղեցին և կիսավեր գավիթը: Վանքում XIV–XVII դդ-ում նորոգվել ու գրվել են մի շարք ձեռագրեր:

ՆԱՎԻՈՒ, Ալիշեր Նավոյի, Նիզամադդին Միր Ալիշեր (1441–1501), ուզբեկ գրող, մտածող, պետ. գործիչ: Գրել է թյուրքի և ֆարսի լեզուներով: Նշանակվել է վեզիր: 1498–99-ին 4 ժող-դիվաններում («Մտքի գանձարան») ամփոփել է քնար. բանաստեղծությունները: Ն–ի բանաստեղծ. արվ–ի գագաթնակետը «Հնգամատյանն» է (*«Խաման»*, 1483–85)՝ կազմված «Արդարակյացների սքանչացումը» (1483), «Լեյլի և Մեջնուն», «Ֆարհադ և Շիրին», «Յոթ մոլորակ» (երեքն էլ՝ 1484), «Իսկանդարի պատը» (1485) պոեմներից: Հեղինակ է նաև «Նրբակերտների հավաքույթ» (1491–92) ժող–ի, «Իրանի թագավորների պատմություն», «Մարգարեների և իմաստունների պատմություն», «Չափերի կշռույթ» երկերի: Ն–ի ստեղծագործությունը մեծ նշանակություն է ունեցել ուզբ. և թյուրքալեզու այլ գրկ–ների զարգացման համար: Հայ. հրատարակվել են «Ֆարհադ և Շիրին» (1948) պոեմը, «Գազելներ» (1968) ժող–ը:

ՆԱՎԼՈՒ, ք. Ուզբեկստանում, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 134 հզ. (2014):

ՆԱՎՈՅԱՆ Միհեր Ռաֆայելի (ծ. 1971), երաժշտագետ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2013): Արվեստագիտ. դ–ր (2016), պրոֆ. (2014): 2001–ից՝ *«Գեղարդ»* երգչախմբի գեղ. ղեկ.: Հեղինակ է «Տաղերի ժանրի ծագումնաբանությունը և ազատ մեղեդիական մտածողությունը» (2001), «Դրվագներ հայ երաժշտության պատմության» (2009) և այլ աշխ-ների:

ՆԱՏԱ (Natta) Ջուլիո (1903–1979), իտալացի քիմիկոս-օրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1966): Հայտնագործել է (1954) տարածականորեն յուրահատուկ պոլիմերման եղանակը, ձևափոխելով Կ. *Ցիգլերի* առաջարկած կատալիզորդները (Ցիգլեր–Նատայի կատալիզորդներ)՝ ստացել է տարածակարգավորված պոլիմերներ:

Նոբելյան մրց. (1963, Կ. Ցիգլերի հետ), ԽՍՀՄ ԳԱ Մ. Վ. Լոմոնոսովի անվ. ոսկե մեդալ (1970):

ՆԱՏԱԼ (Natal), ք–նվ–ինգատ Բրազիլիայում՝ Ատլանտ. օվկ–ի ափին, Ռիու Գրանդի դու Նորտի նահց–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 854 հզ. (2013): Ունի միջազգ. օդանավակայան: Կան VII դ–ի ճարտ. հուշարձաններ:

ՆԱՏԱՆ (Natan) Ժակ Պրիմո (1902–1974), բուլղար տնտեսագետ և պատմաբան: ԲԺՀ ԳԱ ակադ. (1961): ԲԺՀ սոց. աշխ. հերոս (1964): 1952–62-ին՝ Տնտեսագիտ-յան ինստ–ի ռեկտոր: Աշխ-ները վերաբերում են քաղաքատնտ-յան հիմնահարցերին, Բուլղարիայի ժող. տնտ-յան և տնտեսագիտ. մտքի պատմությանը:

Գ. Դիմիտրովի մրց. (1950, 1966):

ՆԱՏԱՆՅԱ, ք. Իսրայելում: Բն.՝ 190 հզ. (2011): Ալմաստի վերամշակման կենտրոն է, ծով. առողջարան:

ՆԱՏԵՐ, XIV դ–ի գրիչ: Գրիչ–ծաղկողներ Հովհաննեսի, *Ավետիսի*, Ստեփանոսի, Գրիգորի հայրն ու ուսուցիչը: Գրչությամբ զբաղվել է Տայքում, Բաբերդի գվո-ում: Ընդօրինակել է բազմաթիվ ձեռագրեր, մեծ մասը Մնդղ–ում է:

ՆԱՏԵՐԵՐԻ ԳԻՇԵՐԱՉՂԱՅԻԿ (Myotis Natereri), հարթաքիթ չղջիկների ընտանիքի կաթնասուն կենդանի: ՀՀ–ում հանդիպում է հվ. մարզերում, Արաքս գետի հովտում: Մարմնի երկ.՝ 42–52 *սմ*, կ. գ.՝ 7 *գ*: Ոչնչացնում է մեծ քանակությամբ մոծակների: Գրանցված է ՀՀ կարմիր գրքում:

ՆԱՏԻԲԻ, Նազարեթ Պոհճալյան (1845–1904), աշուղ: Հորինել է խրատ. բովանդակության երգեր, բանաստեղծություններ: Հեղինակ է արդուլհամիդյան 1895-ի ջարդերի մասին դաստանի: Երգերից տպագրվել են Ա. Պոյաճյանի «Պատմության» մեջ:

ՆԱՏՅՈՒՐՄՈՐՏ (ֆրանս.՝ nature morte – մեռած բնություն), կերպարվ–ի ժանր (հիմնականում՝ հաստոց. երփնագրում). պատկերում է առարկաներ (կահ–կարասի, մրգեր, ծաղիկներ, ձկներ, խփված որսաթռչուններ, մասնագիտ. պիտույքներ ևն): Հայկ. արվ–ում Ն–ի մոտիվներ կան միջնադար. մանրանկարչության մեջ (XVII դ., Մինաս), սակայն որպես ժանր հայկ. կերպարվ–ում ձևավորվել է XIX դ–ի վերջին (Զաքար Զաքարյան): XX դ–ում Ն–ներ են ստեղծել Վ. Սուրենյանցը, Ե. Թադևոսյանը, Ե. Քոչարը, Մ. Սարյանը, Հ. Կոջոյանը, Մ. Աբեղյանը, Հ. Կալենցը, Հ. Հակոբյանը, Ռ. Ադալյանը, Հ. Փուշմանը, Գ. Շաղյանը, Շարթը, Տիրիթը և ուր.:

ՆԱՏՈՉԻՆ Յուրի Վիկտորովիչ (ծ. 1932), ռուս ֆիզիոլոգ: ՌԳԱ ակադ. (1992, թղթ. անդամ՝ 1987–ից): Աշխ–ները վերաբերում են ջրաաղային փոխանակության էվոլյուցիայի և էկոլոգ. ֆիզիոլոգիայի հարցերին, երիկամների ֆիզիոլոգիային: Առաջարկել է կյանքի՝ ծովում առաջացման ընդունվածից տարբեր տեսակետ:

ՌԳԱ Ի. Պ. Պավլովի անվ. (2004), Կառյան (2005) և «Տրիումֆ» (2009) մրց–ներ:

ՆԱՏՐԻՈՒՄ (Natrium, < արաբ. նատրուն – սողա), Na, տարրերի պարբեր. համակարգի I խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 11, ա. զ.՝ 22,98977: Ալկալիական մետաղ է: Անվանումը սկզբնապես վերաբերում էր բնական սոդային: Արծաթասպիտակավուն մետաղ է, փափուկ, թեթև (խտ.՝ 0,968 $գ/սմ^3$), դյուրահալ ($t_{հալ.}$՝ 97,86°C): Օդում արագ օքսիդանում է: Ջրի հետ փոխազդեցությունը կարող է ուղեկցվել պայթյունով: Բնության մեջ տարածված տարր է: Ն–ի գլխ. միներալներն են հալիտը, չիլիական բորակը, տենարդիտը, միրաբիլիտը: Կիրառում են մաքուր մետաղներ (K, Zr, Ta ևն) ստանալու համար, որպես ջերմակիր՝ միջուկ. ռեակտորներում (համաձուլվածքը կալիումի հետ) և լուսավորման աղբյուր՝ *նատրիումային լամպում*: Ն. մասնակցում է հանք. փոխանակությանը բոլոր կենդանի օրգանիզմներում:

ՆԱՏՐԻՈՒՄԱՅԻՆ ԼԱՄՊ, լույսի պարպում. աղբյուր, որում օպտիկ. ճառագայթումն առաջանում է Na–ի գոլորշիներում էլ. աղեղի պարպումից: Ցածր ճնշման Ն. լ. ճառագայթում է վառ դեղին լույս: Լուսատվությունը 100–170 *լմ/Վտ* է, ծառայության ժամկետը՝ 5–7 հզ. *ժ*, օգտագործվում է հիմնականում փողոցների լուսավորման համար: Բարձր ճնշման Ն. լ. ճառագայթում է ոսկեգույն-սպիտակ լույս: Լուսատվությունը՝ 100–140 *լմ/Վտ*, օգտագործում են արտաքին լուսավորության համար:

ՆԱՏՐԻՈՒՄԻ ԳԵՐՕՔՍԻԴ, **նատրիումի պերօքսիդ**՝ Na_2O_2, անգույն բյուրեղներ են (տեխ. Ն. գ. թույլ դեղին է՝ NaO_2 պարունակելու պատճառով): Ուժեղ օքսիդիչ է, 300°C–ից բարձր տաքացնելիս քայքայվում է՝ անջատելով O_2, այսպես կոչված ակտիվ թթվածնի պարունակությունը 20,5 % է: Կիրառում են գործվածքի, թղթի սպիտակեցման, սուզանավերում և շնչառ. սարքերում թթվածնի քանակի վերականգնման համար:

ՆԱՏՐԻՈՒՄԻ ԹԻՈՍՈՒԼՖԱՏ, **նատրիումի հիպոսուլֆիտ**, թիոծծմբական թթվի նատրիումական աղը՝ $Na_2S_2O_3$: Լուծվում է ջրում: $Na_2S_2O_3 \cdot 5H_2O$ բյուրեղահիդրատն օգտագործում են լուսանկարչության (ամրացուցիչ), կտորեղենի (սպիտակեցումից հետո քլորի մնացորդը վերականգնելու համար), կաշվի արդ–յան, բժշկության մեջ, վերլուծ. քիմիայում (տես *Յոդաչափություն*) ևն:

ՆԱՏՐԻՈՒՄԻ ԿԱՐԲՈՆԱՏ, սոդա, Na_2CO_3, տեխ. անվանումը՝ կալցինացված սոդա, բյուրեղահիդրատները՝ $Na_2CO_3 \cdot 10H_2O$, $Na_2CO_3 \cdot 7H_2O$, $Na_2CO_3 \cdot H_2O$: Բյուրեղ. նյութեր են, հայտնի են որպես լվացքի *սոդա*:

ՆԱՏՐԻՈՒՄԻ ՀԻԴՐՈԿԱՐԲՈՆԱՏ, նատրիումի թթու կարբոնատ, խմելու սոդա, $NaHCO_3$: Ջրում լուծելի անգույն բյուրեղներ են: Օգտագործվում է հրուշակեղենի, սննդի արդ–յան, բժշկության մեջ և կրակմարիչներում: Տես նաև *Սոդա*:

ՆԱՏՐԻՈՒՄԻ ՀԻԴՐՕՔՍԻԴ, NaOH, **կծու նատրիում**, տեխ. անվանումը՝ **կաուստիկ սոդա**: Ալկալի է, անգույն բյուրեղ. նյութ, տեխ. Ն. հ. սպիտակ է, ճառագայթաձև կառուցվածքով: Խոնավածուծ է, հեշտությամբ և ուժեղ տաքացնելով լուծվում է ջրում: Կիրառում են արդ–յան քիմ., մանածագործ., օճառաեփման և այլ բնագավառներում: Քայքայում է մաշկը, լորձաթաղանթը, գրգռում շնչառ. ուղիները:

ՆԱՏՐԻՈՒՄԻ ՅՈԴԻԴ, NaI, յոդաջրածնական թթվի նատրիումական աղը: Անգույն բյուրեղներ են, լույսի տակ դեղնում են: Խոնավածուծ է, լուծվում է ջրում: Օգտագործում են բժշկության և անասնաբուժության մեջ:

ՆԱՏՐԻՈՒՄԻ ՆԻՏՐԱՏ, նատրիումական բորակ, չիլիական բորակ, $NaNO_3$, ազոտական թթվի նատրիումական աղը: Անգույն բյուրեղներ են: Ուժեղ օքսիդիչ է, խառնուրդները ֆոսֆորի, ծծմբի, ածխածնի, ալյումինի հետ պայթուցիկ են: Օգտագործվում է որպես ազոտ. պարարտանյութ (16 % N), ինչպես նաև սննդի, ապակու արդ–յան մեջ:

ՆԱՏՐԻՈՒՄԻ ՍՈՒԼՖԱՏ, Na_2SO_4, ծծմբական թթվի նատրիումական աղը: Անգույն բյուրեղներ են, առաջացնում են *թենարդիտ* միներալը: Լուծվում է ջրում: Լուծույթից անջատվում է բյուրեղահիդրատը՝ $Na_2SO_4 \cdot 10H_2O$, որն առաջացնում է *միրաբիլիտ* միներալը (գլաուբերյան աղ): Օգտագործվում է ապակու, սուլֆատային թաղանթանյութի, օճառի, կաշվի արդ–յան, մանածագործության, գունավոր մետաղագործության մեջ, ինչպես նաև բժշկության և անասնաբուժության մեջ՝ որպես լուծողական:

ՆԱՏՐԻՈՒՄԻ ՔԼՈՐԻԴ, կերակրի աղ, NaCl, քլորաջրածնական թթվի նատրիումական աղը: Անգույն բյուրեղներ են: Լուծվում է ջրում: Տարածված է *հալիտ* միներալի ձևով (քարաղ): Քարաղի խոշոր հանքավայր կա նաև ՀՀ–ում (Ավանի աղահանք): Ն. ք. մարդկանց և կենդանիների համար անհրաժեշտ սննդանյութ է, օգտագործվում է նաև միսը, ձուկը ևն պահածոյացնելու համար: Կիրառում են քիմ. արդ–յան մեջ, նրանից ստանում են քլոր, սոդա, նատրիումի հիդրօքսիդ, սուլֆատ ևն: Օրգանիզմում Ն. ք–ի պակասն առաջացնում է արյան թանձրացում, հարթ և կմախք. մկանների ջղաձգություն, նյարդ. համակարգի գործունեության և արյան շրջանառության խանգարումներ: Ն. ք–ի 0,9–%–անոց լուծույթը (ֆիզիոլոգ. կամ իզոտոնիկ) օգտագործվում է ներերակ. ներարկումների, ներարկվող դեղանյութերը լուծելու համար և որպես թունազերծող միջոց (հոգնայի ձևով):

ՆԱՏՐԻՈՒՄԻ ՖՈՍՖԱՏՆԵՐ, ֆոսֆորական թթուների նատրիումական աղերը, օր.՝ մետաֆոսֆատ՝ $NaPO_3$, օրթոֆոսֆատ՝ Na_3PO_4, պիրոֆոսֆատ՝ $Na_4P_2O_7$, համակցված՝ $(NaPO_3)n$: Բյուրեղներ են կամ ապակենման նյութեր: Լուծվում են ջրում: Լվացամիջոցների, ջրի փափկեցուցիչների բաղադրիչներ են: Օգտագործվում են ապակու արտադր–յան մեջ, հանքերի հարստացման ժամանակ, սննդի արդ–յան, լուսանկարչության մեջ ևն:

ՆԱՏՐԻՈՒՄՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, մետաղօրգ. միացություններ, որոնցում նատրիումի ատոմն անմիջականորեն միացած է ածխածնի ատոմին: Կիրառվում են օրգ. սինթեզում՝ որպես անիոնային պոլիմերման կատալիզորդներ:

ՆԱՏՈՒՐԱԼԻԶՄ (ֆրանս.՝ naturalisme, < լատ. naturalis – բնական), 1. (փիլ.) **բնապաշտություն**, հոսանք, բնությունը համարում է ողջ գոյավորի միասն. և համընդհ. սկզբունքը, բացառում է գերբնականի հնարավորությունը: Հատուկ է մատերիալիզմի որոշ տարատեսակների, բնությունը շնչավորության (պանպսիխիզմ) և ոգեղեն (*պանթեիզմ*) ներունակությամբ օժտող ուղղություններին: 2. (Սոցիոլոգիա) Ն. բնորոշ է այն տեսություններին, որոնք հաս–յան զարգացումը բացատրում են տարբեր բնական երևույթներով՝ կլիմ. պայմաններով, աշխարհագր. միջավայրով, մարդկանց կենսբ. և ռասայական առանձնահատկություններով ևն: Ն. XVI–XVIII դդ–ի եվրոպ. լուսավոր. մտքի առաջատար սկզբունքներից էր («բնական մարդու», բնական հաս–յան, բնական բարոյականության, բնական իրավունքի հայեցակարգեր ևն): 3. **Գրականության մեջ և արվեստում**, 1860–70–ական թթ–ին Եվրոպայում և ԱՄՆ–ում: Տեսաբանը և ղեկ–ը Է. *Զոլան* էր, որի շուրջը համախմբվել են Գի դը Մոպասանը, Ժ. Կ. Հյուիսմանսը, Գոնկուր եղբայրները, Ա. Սեարը, Գ. Հաուպտմանը, Ա. Հոլցը, Ֆ. Նորրիսը և ուր.: Գեղ. ստեղծագործության մեջ մարդկային կյանքի օրինաչափությունները ներկայացվում էին բնական երևույթների գիտ. իմացությամբ, սոցիալ. միջավայրի մանրամասն պատկերմամբ: Ն–ի առարկան մարդու բնավորությունն էր՝ պայմանավորված ամենից առաջ նրա կենսբ. օրենքներով, մասնավորապես՝ ժառանգականությամբ: Ն–ի սկզբունքները տարբեր չափերով և երանգներով դրսևորվել են նաև XX դ–ի սկզբի առանձին հայ գրողների ստեղծագործություններում (Օ. Չիֆթե–Սարաֆի «Միամիտի մը արկածները» վեպում, Ա. Ահարոնյանի, Մ. Մանվելյանի և ուր. արձակ և դրամատիկ. երկերում):

ՆԱՏՕ, տես *Հյուսիսատլանտյան դաշինք 1949*:

ՆԱՐԱ, Օկա գետի ձախ վտակը ՌԴ Մոսկվայի և Կալուգայի մարզերում: Երկ.՝ 158 *կմ*, ավազանը՝ 2030 *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 4,92 *մ³/վ*: Ափին են Նարո Ֆոմինսկ, Սերպուխով ք–ները:

ՆԱՐԱ, ք. Հոնսյու կղզում, Ճապոնիայի առաջին մայրաքաղաքը (710–784), համանուն պրեֆեկտուրայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 362 հզ. (2010): Քաղաք–թանգարան է: Ճարտ. հուշարձաններից են Յակուսիձի, Կոֆուկիձի (երկուսն էլ՝ VII–VIII դդ.), Տոդայիձի, Սին Յակուսիձի, Տոսեդայձի վան. համալիրները՝ տաճարներով, քանդ–յամբ:

ՆԱՐԱՄՍԻՆ, Նարամսուեն, *Աքքադի* թագավոր՝ մ. թ. ա. մոտ 2236–2200–ին: Ուժեղացրել է բռնապետ. իշխանությունը, իրեն հռչակել է աստված: Սպանվել է կուտիների (գուտիներ) արշավանքի ժամանակ: Ն–ի օրոք ծաղկման է հասել աքքադ. մշակույթը, ստեղծվել է «*Գիլգամեշ*» դյուցազնավեպը:

ՆԱՐԱՅԱՆ Ռազիպուրամ Կրիշնասվամի (1906–2001), հնդիկ անգլիագիր գրող: Հեղինակ է «Մահաթմային սպասելիս» (1955), «Մուրբ Ռաջուն» (1958), «Մարդակերը Մալգուդիում» (1961), «Քաղցրավենիք վաճառողը» (1967), «Նկարիչը մրոտում է ցուցանակները» (1977) ռեալիստ. վեպերի, «Աստղագուշակի օրը» (1947) և այլ պատմվածքների ժող–ների:

ՆԱՐԱՅԱՆԳԱՆՋ, ք. Բանգլադեշում, նվինգստ Սիտալակհյա գետի ափին, համանուն օկրուգի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,49 մլն (2010):

ՆԱՐԳԵՍ (Narcissus), **նարգիզ**, *շքանարգիզազգիների* ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 60 տեսակ՝ հիմնականում Միջերկրածովյաքում: Մի շարք տեսակներ աճեցնում են որպես գեղազարդիչ (հայտնի է այգու Ն–ի ավելի քան 12 հզ. սորտ): Բոլոր տեսակները քիչ թե շատ թունավոր են: Սոխուկներն ու տերևները պարունակում են լիկորին ալկալոիդ. ունի հակաբորբոք., ջերմիջեցնող, ցավազրկող, բրոնխ. գեղձերի արտազատությունն ուժեղացնող հատկություններ: ՀՀ–ում մշակվում են բազմաթիվ սորտեր՝ վաո դեղին, սպիտակ, խոշորածաղիկ ևն:

ՆԱՐԳԻԶՅԱՆ Արմեն Բյուզանդի (1952–2007), սրտաբան: Բժշկ. գիտ. դ–ր (2001): Ուսումնասիրել է իշեմիկ հիվանդությունը, սրտի ռիթմի խանգարումները, մասնավորապես՝ շողացող անոթթմությունը, իմուն. համակարգի ներգրավումը սրտային ախտահարումների ժամանակ: ՀՀ սրտաբանների ընկ–յան (1955–ից), Հայ բժիշկների միության (1996–99) հիմնադիր–քարտուղար:

ՆԱՐԳԻԶՅԱՆ Գեղամ Արմենակի (1929–1995), թերապևտ: Բժշկ. գիտ. դ–ր (1968): Աշխ–ները վերաբերում են կուրորտաբանությանը, սրտաբանությանը, թոքաբանությանը և մասնագիտ. ախտաբանությանը:

ՆԱՐԳԻՍ Դատտ (Ֆաթիմա Ռաշիդ, 1929–1981), հնդիկ դերասանուհի: 1943–ից նկարահանվել է «Անձրևների շրջանը», «Թափառաշրջիկը», «Պարոն 420» (երեքն էլ՝ Ռաջ Կապուրի հետ), «Ուղևորություն երեք ծովերից այն կողմ», «Մայր Հնդկաստան» (միջազգ. կփ մրց., 1957, Կառլովի Վարի) և այլ ֆիլմերում:

Հնդկաստանի Ազգ. կինոմրց. (1968):

ՆԱՐԴԻ, արլ. հնագույն խաղ: Հայտնի են երկար, կարճ, ուսանող. և այլ ձևեր: Խաղատախտակը երկփեղկ հարթ տուփ է: Խաղում են 2 հոգի՝ 15–ական սև ու սպիտակ շրջանաձև տափակ քարերով և 1–6 թվակիր զույգ խորանարդիկներով (զառեր): Տարածված է արաբների, կովկաս. և այլ ժողղ–ների, նաև հայերի մոտ:

ՆԱՐ–ԴՈՍ (Հովհաննիսյան Միքայել Զաքարի, 1867–1933), գրող: 1890–1906–ին՝ *«Նոր–Դար»* թերթի պատ. քարտուղար: Հայ ռեալիստ. գրկ–յան հոգեբ. ուղղության ներկայացուցիչ: Հեղինակ է «Քնքուշ լարեր» (1887), «Զազունեան» (1890) վեպերի, «Ճշմարիտ բարեկամը» (1886), «Աննա Սարոեան», «Բարերար եւ որդեգիր» (երկուսն էլ՝ 1888), «Ես եւ նա» (1889), «Սպանուած աղաւնի» (1898) վիպակների, «Մեր թաղը» պատմվածաշարի, «Նեղ օրերից մէկը» (1904), «Վերջին մոհիկանները» (1930) պատմվածքների և այլ գործերի: «Պայքար» (1911) վեպում ներկայացրել է իր ժամանակի հաս. գլխ. հոսանքների՝ պահպանող. և ազատամիտ (նորդարական ու մշակական) բախումը: «Մահը» (1912) վեպում պատկերել է հոոետես.

փիլ–յուն որդեգրած, «առանց դավանանքի» երիտասարդի անկում. գաղափարախոսությունը:

ՆԱՐԴՈՍ (lavandula), **հուսամ, փաղանգամուշկ**, խուլեղինջազգիների ընտանիքի թփերի և կիսաթփերի ցեղ: Հայտնի է 25 տեսակ՝ հիմնականում Միջերկրածովայքում: Մի շարք երկրներում նեղտերև և այլ տեսակներ մշակում են յուղ ստանալու համար: Որոշ տեսակներ գեղազարդիչ են, դեղաբույս: Մեղրատու է:

ՆԱՐԴՈՒՆԻ Շավարշ (Այվազյան, 1898–1969), գրող, հրտ–խմբ.: 1928–37–ին՝ *«Երկունք»* ամսագրի, 1934–40 և 1945–67–ին՝ *«Հայ բոյժ»* պարբերաթերթի հիմնադիր–խմբ.: Հեղինակ է «Հէքիաթներու ալբոմ» (1927), «Մեղեդինե՛ր, մեղեդինե՛ր» (1933), «Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ» (1938), «Նարդեան շիթեր» (1945), «Սպիտակ առաւօտ» (1963), «Ահա ես ճանկերս լայն բացած» (1966), «Գրական ցոլքեր» (1979), «Աքսորի օրագիր» (2000), «Խորհրդերգութիւն», «Անձրևին ձորը» (երկուսն էլ՝ 2011) բանաստեղծությունների, պատմվածքների, հեքիաթների և այլ ժող–ների:

«ՆԱՐԵԿ», *Գրիգոր Նարեկացու* «Մատյան ողբերգության» պոեմի տարածված անվանումը: Դեռևս միջնադարում պոեմը հայտնի էր որպես «դեղ կենաց», որի օգնությամբ ձգտել են մաքրվել հոգով և ազատվել մեղքերից: «Ն.»–ին վերագրել են բուժիչ զորություն. կարդացել են հիվանդների ապաքինման համար:

ՆԱՐԵԿԱՎԱՆՔ, X դ–ի ճարտ. համալիր Վանա լճի մերձակա Նարեկ գ–ում: Համալիրի կազմում էին 2 եկեղեցի, գավիթը, զանգակատունը, մատուռը, պարիսպը և կից շինությունները: Սբ Սանդուխտ եկեղեցին եռախորան, զույգ ավանդատներով, կամարակապ խորշերով, արտաքուստ ուղղանկյուն կառույց է: Արլ–ից կից էր Գրիգոր Նարեկացու ուղղանկյուն հատակագծով, գմբեթավոր մատուռ–դամբարանը, հվ–ից՝ գմբեթավոր դահլիճ Սբ Աստվածածին եկեղեցին: 1787–ին կառուցվել է գավիթ, որի արմ. մուտքի առջև եռահարկ զանգակատունն էր (1812): Ավերվել է 1915–ին:

ՆԱՐԵԿԱՎԱՆՔԻ ԴՊՐՈՑ, գրչության կենտրոն: Հիմնադրվել է X դ–ում Նարեկավանքում՝ *Անանիա Նարեկացու* ջանքերով: Առաջին հայտնի գործերը Սահակի և Գրիգորի՝ իրենց հոր՝ *Խոսրով Անձևացու* Պատարագի մեկնության ընդօրինակություններն են (950–ին): Պահպանված առաջին ձեռագիրն Ավետարան է (1069, ընդօրինակել է Հովհաննես գրիչը՝ հավանաբար Մեսրոպ Սաշտոցի ձեռագրից):

ՆԱՐԵԿՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ, հիմնադրվել է 1846–ին Կ. Պոլսում՝ որպես երկսեռ նախակրթարան: 1895–ին Ն. վ–ի հիմքի վրա ստեղծվել է *Եսայան վարժարանը*:

ՆԱՐԵՎ (Narew), գետ Լեհաստանում (ակունքները Բելառուսում են), Վիսլայի աջ վտակը: Երկ.՝ 484 *կմ*, ավազանը՝ 75,2 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1332 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է, ջրանցքով կապված է Նեման գետին:

ՆԱՐԻՄԱՆՅԱՆ Միքայել Զաքարի (ծ. 1952), թերապևտ: Բժշկ. գիտ. դ–ր (2000), պրոֆ. (2001): Զաքար *Նարիմանովի* որդին: Եղել է ԵՊԲՀ ռեկտոր (2012–16): Աշխ–ները վերաբերում են ալերգաբանությանը, թոքաբանությանը, բրոնխ. հեղձուկին, շաքարախտին, ընտանեկան բժշկությանը: ՀՀ ԱՆ գլխ. մասնագետ (1998–2000), գլխ. թերապևտ (2003–04), ՀՀ ինտերնիստների ընկերակցության թոքաբանության բաժանմունքի ղեկ. (1996–ից), Հայ թերապևտների ընկերակցության նախագահ (2008–ից): ԵՊԲՀ ոսկե մեդալ (2001, 2010):

ՆԱՐԻՄԱՆՈՎ, Զաքար Միքայելի (1925–1988), քիթկոկորդականջաբան, առողջապ–յան գործի կազմակերպիչ, հաս. գործիչ: Միքայել *Նարիմանյանի* հայրը: ՀԽՍՀ ԱՆ նախարար (1960–75): Զգալի ավանդ ունի ՀԽՍՀ առողջապ. ցանցի ընդլայնման և մասնագիտացման, հատկապես՝ մանկաբուժ. գործի, գյուղ. առողջապ–յան կազմակերպման և բժիշկների կատարելագործման բնագավառներում:

ՆԱՐԻՆԻ ՄԱՐԶ, վտմ Ղրղըզստանում: Տարածքը՝ 45,2 հզ. *կմ*^{2}, բն.՝ 262 հզ. (2011): Վարչ. կենտրոնը՝ Նարին:

ՆԱՐԻՆՅԱՆ Սերգեյ Հովհաննեսի (1908–1967), խորհրդ. բանակի հրետանու գեներալ–մայոր (1958): ՀԱՊ–ի ժամանակ (1942–43) եղել է 67–րդ բանակի հրետանու շտաբի օպերատիվ բաժնի պետի օգնական, կորպուսի օպերատիվ բաժնի, 1944–ից՝ հրետան. կորպուսի շտաբի պետ: 1916–67–ին՝ Մոսկվայի հրետան. ակադ–ի դասախոս:

ՀՄՊ 2–րդ և 1–ին աստիճանների (1943), Կարմիր աստղի (1943) շքանշաններ:

ՆԱՐԻՆՅԱՆ Սիմոն Գասպարի (1906–1980), երկրաբուսաբան, էկոլոգ: Կենսբ. գիտ. դ–ր (1966): Ուսումնասիրել է Արագածի բարձրլեռն. և Մայմեխի ենթալպ. ֆլորան: 1949–ին անհիմն բռնադատվել է, հետագայում (1956)՝ արդարացվել:

ՆԱՐԿՈՄԱՆԻԱ, տես *Թմրամոլություն*:

ՆԱՐԿՈՏԻԿ ԲՈՒՅՍԵՐ, պարունակում են ԿՆՀ–ն գրգռող կամ ընկճող նյութեր: Մեծ մասամբ բարձրակարգ են, ստորակարգ են միայն որոշ սնկեր: Ն. բ. են քնաբեր խաշխաշը, ծխախոտը, հնդ. կանեփը, ելաբույսը, մահամորմը, բանգին, թեյը, սրճենին ևն: Ազդող նյութը գլխավորապես ալկալոիդներն են (օր.՝ քնաբեր խաշխաշը պարունակում է 25 տարբեր ալկալոիդներ՝ մորֆին, պապավերին, կոդեին ևն): Մի շարք Ն. բ. արժեքավոր դեղաբույսեր են և կիրառվում են նյարդ. համակարգի, ներքին օրգանների և այլ հիվանդությունների բուժման համար: Ն. բ–ից ստացված պատրաստուկները հաճախակի օգտագործելուց առաջանում է թմրամոլություն: ՀՀ–ում աճում է սովոր. արջընկույզը, մշակվում է ծխախոտ:

ՆԱՐԿՈՏԻԿ ԴԵՂԱՆՅՈՒԹԵՐ, դեղանյութերի խումբ, որն ընտրողաբար է ազդում ԿՆՀ–ի վրա: Նարկոզի համար Ն. դ–ի խմբում հիմնականում ներառվել են այդ նպատակով օգտագործվող դեղանյութերը, իսկ նյարդահակ դեղամիջոցները բաժանվել են առանձին խմբերի՝ ցավամոքիչներ, քնաբերներ, նյարդ. համակարգը հանգստացնողներ ևն: Գործն. բժշկության մեջ հաճախ կիրառում են Ն. դ–ի տարբեր զուգորդումներ, որոնք թուլացնում կամ լրիվ վերացնում են Ն. դ–ի բացաս. ազդեցությունները: Բարդ վիրահատությունների ժամանակ նախատեսվում է նաև Ն. դ–ի համակցված օգտագործումն այլ խմբերի (միոռելաքսանտներ, հակահիստամին., ադրենոլիտիկ պատրաստուկներ, նեյրոլեպտիկներ, տրանկվիլիզատորներ ևն) դեղամիջոցների հետ: Աշակված է նոր ուղղություն՝ նեյրոլեպտանալգեզիան՝ ցավազրկումը նեյրոլեպտիկ և ցավը հանգստացնող դեղանյութերով՝ առանց Ն. դ. օգտագործելու:

ՆԱՐՄԱԴԱ, **Նարբադա**, գետ Հնդկաստանում: Երկ.՝ 1250 *կմ*, ավազանը՝ 102 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1260 *մ*^{3}/*վ*: Հոսում է Դեկանի սարահարթով և թափվում Արաբ. ծովի Կամբեյան ծոց: Նավարկելի է էստուարում (գետաբերան): Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով: Պաշտամունք. գետ է հինդուստանցիների համար:

ՆԱՐՆՋԵՆԻ (Citrus sinensis), ***սպրպազգիների*** ընտանիքի ցիտրուս ցեղի մշտադալար պտղատու ծառ: Հայրենիքը Հվ. Չինաստանն ու Հնդկաչինն են: Մշակվում է տարբեր երկրների արևադարձ. ու մերձարևադարձ. շրջաններում, Կովկասի սևծով. ափին: Պտղամիսը հյութալի է, քաղցրաթթվաշ, հաճելի համով, ունի սննդարար, բուժիչ նշանակություն: Հարուստ է A, B, C, P վիտամիններով, հանք. նյութերով: Օգտագործվում է թարմ և վերամշակված (հյութ, մուրաբա, ջեմ ևն): Կեղևից ստացվում է եթերայուղ, որն օգտագործվում է հրուշակեղենի և օծանելիքի արտադր–յան մեջ:

ՆԱՐՈԴՆԻԿՈՒԹՅՈՒՆ, տարաստիճան (ռազնոչին) մտավորականության գաղափարախոսություն և շարժում Ռուսաստանում XIX դ–ի 2–րդ կեսին: Հանդես է եկել ճորտատիրության և Ռուսաստանի կապիտալիստ. զարգացման դեմ և գյուղաց. հեղ–յան միջոցով ինքնակալության տապալման համար: Հիմնադիրներն են Ա. Ի. *Գերցենը*, Ն. Գ. *Չեռնիշևսկին*, գաղափարախոսները՝ Մ. Ա. *Բակունինը*, Պ. Լ. *Լավրովը*, Պ. Ն. *Տկաչովը*: 1881–ին նարոդնովոլականների՝ *Ալեքսանդր II* կայսեր սպանությունից և «Նարոդնայա վոլյա» գաղտնի կազմ–յան ջախջախումից հետո Ն. անկում է ապրել: 1890–1900–ական թթ–ի սկզբին հեղ. Ն. որոշակի վերածնունդ է ապրել՝ կապված *Էսէռների* կուս–յան գործունեության հետ:

Հայ նշանավոր հեղ. նարոդնիկներ են Ստեփան *Կարդաշևը*, Կ. Մամիկոնյանը, Գ. Արազյանը, Թամար Ադամյանը, Հ. Մանուչարյանը և ուր.:

ՆԱՐՈՎՉԱՏՈՎ, Սերգեյ Սերգեևիչ (1919–1981), ռուս բանաստեղծ: Սոց. աշխ. հերոս (1979): Հեղինակ է «Խարույկ» (1948), «Ազատության զինվորներ» (1952), «Խստապահանջ ճանապարհորդը» (1963), «Կեսօր» (1969), «Մենք կյանք ենք մտնում» (1978) բանաստեղծությունների ժող–ների, «Վասիլի Բուսլաև» (1967) և այլ պոեմների, «Լերմոնտովի լիրիկան» (1964), «Արտասովոր գրականագիտություն» (1970), «Մեծ բանաստեղծն ու քաղաքացին» (Հ. Թումանյանի մասին, 1970, հայ.՝ 1970) աշխ–ների և այլ գործերի:

ՌԽՖՍՀ Մ. Գորկու անվ. Պետ. մրց. (1974):

ՆԱՐՍԵՆ (մոտ 478–568), հայազգի բյուզանդացի զորավար, պետ. գործիչ: Կայսր *Հուստինիանոս I*–ն Իտալիայում Բյուզանդիայի խախտված դիրքերը վերականգնելու նպատակով Ն–ին, որպես գլխ. հրամ–ի, ուղարկել է Իտալիա: Ն. 552–ին քանիցս պարտության է մատնել վեստգոթերին, գրավել Հռոմը, Իտալիայի մեծագույն մասը ենթարկել կայսրությանը: 554/555–ին նշանակվել է Իտալիայի կառավարիչ: Ն–ի *մարտավարությունը* մտել է ռազմ. արվ–ի պատմության մեջ:

ՆԱՐՍԵՍ, **Ներսես** (ծ. թ. անհտ–543), հայազգի բյուզանդացի զորավար: Ըստ Նի–

կողայոս *Ադոնցի*՝ Կամսարական: Զորավարներ *Արապիոսի* և *Սահակի* եղբայրը: 538/539-ին Իտալիայում մասնակցել է գոթերի դեմ պատերազմին: Հետագայում հայկ. զորաբանակի գլուխ անցած (Սահակի հետ) Բյուզանդիայի կողմից մասնակցել է Պարսից արքա Խոսրով I-ի դեմ պատերազմին, աչքի ընկել Անգղի ճակատամարտում (543), որտեղ էլ ծանր վիրավորվել է ու մահացել:

ՆԱՐՎԱ, գետ ՌԴ և Էստոնիայի սահմանին: Սկիզբ է առնում Չուդ–Պսկովյան լճից և թափվում Բալթիկ ծովի Ֆինն. ծոց: Երկ.՝ 77 *կմ*, ավազանը՝ 56,2 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 399 *մ*^{3}/*վ*:

ՆԱՐՎԱԼ (Monodon monoseros), **միաեղջյուր**, դելֆինների ընտանիքի ծով. կաթնասուն կենդանի: Երկ.՝ մինչև 6 *մ*, կ. զ.՝ մինչև 1,5 *տ*: Արուների մոտ զարգացած է միայն ձախ ժանիքը. երկ.՝ մինչև 3 *մ*: Ապրում է արկտիկ. ջրերում: Փոքրաթիվ է, պահպանվում է:

ՆԱՐՏԱՅԱՆ ԷՊՈՍ, կովկաս. ժողղ–ների հնագույն էպոս (չափածո և արձակ) դյուցազուններ մասին: Հիմքում մ. թ. ա. VII–IV դդ–ում ստեղծված ալան. հին վիպաշարն է: Գրառվել է XIX դ–ում:

ՆԱՐՏՈՎ Անդրեյ Կոնստանտինովիչ (1693–1756), ռուս մեխանիկոս, գյուտարար: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1723): Ստեղծել է տարբեր կառուցվածքների յուրատիպ, այդ թվում՝ խառատ. և պարուրակահան հաստոցներ մեքենայացված հենոցով և փոխովի ատամնանիվների հավաքածուով: Աշակել է թնդանոթների ձուլման նոր եղանակներ: Հայտնագործել է 44 հրանոթներից (3-ֆուտանոց) բաղկացած մարտկոցը, օպտիկ. նշանացույցը:

ՆԱՐՅԻՍ (Narcissus), **Նարգիս**, գեղեցիկ պատանի հուն. դից–յան մեջ, գետերի աստված Կեփիսոի որդին: Էքո հավերժահարսի սերը մերժելու համար *Աֆրոդիտեն* պատժել է նրան. գետի ջրերում տեսնելով իր արտացոլանքը՝ սիրահարվել է ինքն իրեն և չի կարողացել բաժանվել իր պատկերից, մահացել է քաղցից ու տառապանքից (այստեղից էլ՝ «ինքնասիրահարված Նարցիս» արտահայտությունը):

«ՆԱՐՅԻՍ», գր–գեղ., մշակութ. հանդես (2006–ից, Երևան): Խմբ–ներ՝ Վահան Վարդանյան, Սոնա Վան (2013–ից):

ՆԱՅԻՈՆԱԼ–ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՄԱԿՈՒԹՅՈՒՆ, Գերմանիայի նացիոնալ–սոցիալիստական բանվորական կուսակցություն, քաղ. կուս–յուն 1919–45-ին՝ Ա. *Հիտլերի* առաջնորդությամբ (1921-ից): 1933-ին անցել է իշխանության, եղել է Գերմանիայում հաստատված ամբողջատիր. ահաբեկչ., ռազմատենչ վարչակարգի գլխ. օղակը: Վերացվել է ԵՀՊ-ում Գերմանիայի ջախջախումից հետո:

ՆԱՅՈՒՄԵ Սոսեկի (1867–1916), ճապոնացի գրող: Ժամանակակից ճապոն. գրկ–յան հիմնադիրներից: Հեղինակ է «Ձեր խոնարհ ծառա կատուն» (1906), «Սանսիրո» (1908), «Այնուհետև» (1909), «Դարպաս» (1910) ինքնակենսագր. եռերգության, «Լույս և խավար» (1916) և այլ «ինտելեկտուալ» վեպերի:

ՆԱՈՒՄԵՆԿՈ Իվան Յակովլևիչ (1925–2006), բելառուս գրող, գրականագետ: ԲԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1978): Բելառուսի ժող. գրող (1995): ԲԽՍՀ ԳԱ ակադ. (1980): Հեղինակ է «Մերձճանապարհային սոճին» (1962), «Քամին՝ սոճիներում» (1967), «Քառասուներեքերորդը» (1973) եռերգության, «Երազողը» (1985) վեպի, «Մեր պատանեկության բարդիները» (1978), «Լուսաբացին փշատերև անտառում» (1988) պատմվածքների ու վիպակների ժող–ների:

ԲԽՍՀ Յ. Կոլասի անվ. Պետ. մրց. (1972):

ՆԱՈՒՄՈՎ Ալեքսեյ Ալեքսանդրովիչ (1916–1985), ռուս. ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1964): Ստեղծել է (աշխատակիցների հետ) հանդիպակաց փնջերով առաջին արագացուցիչները: Ղեկավարել է բարձր էներգիաների ֆիզիկայի ինստ-ի 70 ԳԷՎ արագացուցչի գործարկումը:

ԽՍՀՄ Պետ. (1953), Լենինյան (1967) մրց–ներ:

ՆԱՈՒՄՈՎ Բորիս Նիկոլաևիչ (1927–1988), ավտոմատացման բնագավառի ռուս. գիտնական: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1984): Աշխ–ները վերաբերում են կառավարման ոչ գծային համակարգերի տեսությանը, ԱԿՀ-ի և կառավարող հաշվող. համալիրների կառուցման սկզբունքներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1981, 1987):

ՆԱՈՒՄՈՎ Վլադիմիր Նաումովիչ (ծ. 1927), ռուս. կինոռեժ.: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1965): ԽՍՀՄ ժող. արտիստ (1983): Ն. Ն. *Բելոխվոստիկովայի* ամուսինը: Նկարահանել է «Անհանգիստ երիտասարդություն» (1955), «Պավել Կորչագին» (1957), «Խաղաղություն նորելուկին» (1961), «Վազք» (1971), «Լեգենդ Թիլի մասին» (1977), «Թեհրան-43» (1981), «Ախ» (1984, բոլորը՝ Ա. Ա. *Ալովի* հետ), «Ընտրություն» (1988), «Սպիտակ տոն» (1994), «Զոկո'նդան ասֆալտի վրա» (2007) և այլ ֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1985):

ՆԱՈՒՏԻԼՈՒԴՆԵՐ (Nautiloidea), գլխոտանի փափկամարմինների դասի ծով. անողնաշարների ենթադաս (կամ վերնակարգ): Հայտնի է մոտ 2 հզ. տեսակ. ի հայտ են եկել քեմբրում, ծաղկման են հասել օրդովիկում և սիլուրում: Պահպանվել են միայն *նավախեցիները*:

ՆԱՈՒՐՈՒ (Nauru), **Նաուրուի Հանրապետություն** (Republic of Nauru), պետություն Խաղաղ օվկ–ի հվ–արմ–ում՝ համանուն կղզու վրա: Տարածքը՝ 21,3 *կմ*^{2}, բն.՝ 10 հզ. (2011): Մայրաքաղաքը՝ Յարեն (փաստացի): Պետ. լեզուները՝ անգլ., նաուրուերեն: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Բաժանված է 14 վարչ. օկրուգների: Հավատացյալների մեծ մասը բողոքական է: Անդամակցում է ՄԱԿ-ին, Ազգերի համագործակցությանը: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 5 հզ. ԱՄՆ դոլար է (2005): Արտահանում է ֆոսֆատ, կոկոս, բանան ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ ավստրալ. դոլար:

Կղզին հայտնաբերել են անգլիացիները 1798-ին: XIX-ում այստեղ բնակություն են հաստատել առևտրականներ, մարգարիտ որոնողներ: Բազմիցս նվաճել են Գերմանիան, Ավստրալիան, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան: 1920-ից եղել է Մեծ Բրիտանիայի, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի համատեղ կառավարման տակ: ԵՀՊ-ի տարիներին գրավել են ճապոն. զորքերը: Անկախության շարժումն սկսվել է 1950-ական թթ-ին: Անկախացել է 1968-ին: 1990-ից օֆշորային գոտի է, 2003-ին վերապրել է խոր քաղ. ճգնաժամ:

«ՆԱՒԱՍԱՐԴ», գր–գեղ. տարեգիրք (1914, Կ. Պոլիս): Խմբ–ներ՝ Դանիել Վարուժան, Հակոբ Սիրունի:

«ՆԱՒԱՍԱՐԴ», գրկ–յան և արվ–ի պարբ. (1923–26, Բուխարեստ): Խմբ.՝ Հակոբ Սիրունի:

«ՆԱՒԱՍԱՐԴ», գր–մշակութ. ամսաթերթ (1982–ից, Գլենդել՝ հայ., անգլ.): Խմբ.՝ Արմեն Տոնոյան:

ՆԱՖԻԼՅԱՆ Լևոն (1877–1937), ճարտ.: Պրոֆ.: Համահեղինակ է Կահիրեում՝ Նահապետյանների տան, իշխանուհի Սուլինայի ապարանքի, Ալեքսանդրիայում՝ Իբրահիմ փաշայի ամառանոցի, Կ. Պոլսում՝ «Շիրքեթ խայրի» նավ. ընկ–յան Ղալաթիայի պաշտոնատեղիի, «Միլլի» ապահովագր. ընկ–յան կենտրոնատեղիի (բոլորը՝ 1910), հեղինակ՝ Փարիզում՝ Հայ ուսանողների տան, Հալեպում՝ «Պարոն» հյուրանոցի, Առևտր. բանկի շենքի, Երևանում՝ «Մարի Նուբար» ակնաբուժարանի (1927), Հայ եկեղեցու՝ Կահիրեի առաջնորդարանի շենքի և Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու (1927) նախագծերի: Փարիզի «Անի» հայ արվեստագետների խմբակցության անդամ (1926–ից):

ՆԳՈՒԳԻ ՎԱ ԹՀԻՈՆԳՕ (մինչև 1976–ը՝ Ջեյմս Նգուգի, ծ. 1938), քենիացի անգլիագիր գրող: Հեղինակ է «Մանկիկ, լաց մի՛ լինիր» (1964), «Ցորենի հատիկը» (1967), «Արյունոտ ծաղկաթերթիկներ» (1977), «Սատանան խաչի վրա» (1982) վեպերի, «Կալանավորը: Բանտային օրագիր» (1981) ինքնակենսագր. գրառումների, «Երազներ՝ պատերազմի ժամանակ» (2010), «Մեկնիչի տանը» (2012), Քենիայի պատմությանը վերաբերող բանաստեղծությունների և այլ գործերի:

ՆԳՈՒԻՆ ԴԻՆ ԹՀԻ (1924–2003), վիետնամցի գրող: Հեղինակ է «Առա՛ջ, ի գրո՛հ» (1951) վիպակի, «Ափերը խորտակվում են» (1962–70) պատմահեղ. թեմայով երկերգության, «Գետը թափանցիկ կանաչ է» (1974) բանաստեղծությունների ժող–ի, նաև պիեսների:

Հո Շի Մինի անվ. Պետ. մրց. (1996):

ՆԴՈԼԱ (Ndola), ք. Զամբիայում, Կոպերբելտ պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 528 հզ. (2013): Ունի միջազգ. օդանավակայան: Գունավոր մետաղաձուլության կենտրոն է:

«ՆԵ», ամսագիր կանանց համար և կանանց մասին (1995–2014, Երևան): Հիմնադիր–խմբ.՝ Անահիտ Ամիրյան:

ՆԵ ԷՅ (1912–1935), չին կոմպոզիտոր: Հեղինակ է «Փոթորիկ Յանցզի գետում» օպերայի, զանգված., նաև չին. ազգ. հեղյանը նվիրված երգերի («Կամավորների քայլերգ», 1949–ից՝ ՉԺՀ օրհներգը, ևն), կինոյի և թատրոնի երաժշտության:

ՆԵ ՎԻՆ (1911–2002), Բիրմայի (այժմ՝ *Մյանմա*) նախագահ՝ 1974–81-ին: 1971–88-ին՝ «Բիրմայի սոցիալիստական ծրագիր» կուս–յան ԿԿ գործկոմի նախագահ: 1949–72-ին՝ ԶՈՒ-ի գլխ. հրամ.: 1958–60, 1962–74-ին՝ վարչապետ:

ՆԵԱՆԴԵՐԹԱԼՅԱՆ ՄԱՐԴ, հնագույն պեղածո մարդ, հնամարդ (մ. թ–ից 120–30 հզ. տարի առաջ): Առաջին պեղածո մարդկանցից մեկը հայտնաբերվել է (1856) Նեանդերթալ հովտում (Գերմանիա, Դյուսելդորֆի մոտ, այստեղից էլ՝ անվանումը): Արմ. Եվրոպայի Ն. մ–կանց բնորոշ են ոչ բարձր հասակը, խոշոր ուղեղը, ներքին ծնոտը՝ առանց կրկնակզակի ելուստի: Առաջավոր Ասիայում նրանք ունեցել են որոշակի զարգացած գծեր, որոնք նրանց

մոտեցնում են մարդկանց արդի ֆիզ. տիպի պեղածո նախնիներին: Մի շարք գիտնականներ ուշ շրջանի (50–30 հզ. տարի առաջ) արևմտաեվրոպ. Ն. մ–կանց համարում են մարդու էվոլյուցիայի մեջ հատուկ, հետագա զարգացում չունեցած ճյուղ: Ն. մ–ու ներքին ծնոտի հատված է հայտնաբերվել ԼՂՀ Հադրութի շրջանի Ազոխի քարայրում:

ՆԵԱՊՈԼ (Napoli), ք–նվինգստ Հվ. Իտալիայում՝ Վեզուվի ստորոտին՝ Տիրենյան ծովի Նեապոլյան ծոցի ափին, Ն. գվո–ի վարչ. և երկրի հվ. մասի տնտ. ու մշակութ. խոշոր կենտրոնն է: Բն.՝ 990 հզ. (արվարձաններով՝ շուրջ 3 մլն, 2014): Տրանսպորտ. հանգույց է: Կան նավթավերամշակման, նավթաքիմ., մետաղաձուլ., մեքենաշին., սննդի, տեքստիլ, թղթի, ցեմենտի արդ–յան և այլ ձեռն–ներ: Առողջարան. շրջան է, զբոսաշրջության կենտրոն: Ունի համալսարան (1224), կոնսերվատորիա, գործում են «Սան Կառլո» օպեր. և «Սան Ֆերդինանդո» թատրոնները, Ազգ. թանգարանը, պատկերասրահ, հրաբխագիտ. կայան:

Ն. սկզբնապես հուն. գաղութ էր: 1139–ին միացվել է Սիցիլ. թագավորությանը, 1266–ից հետո դարձել է նրա մայրաքաղաքը: 1282–1442, 1501–04–ին Ն–ի թագավորության մայրաքաղաքն էր, 1504–ին մտել է երկու Սիցիլիաների թագավորության մեջ: 1806–15–ին Ն. Ֆրանսիայից կախման մեջ գտնվող Ն–ի, իսկ 1815–60–ին՝ երկու Սիցիլիաների թագավորության մայրաքաղաքն էր: Ճարտ. հուշարձաններից են վաղ քրիստ. կատակոմբները (II–V դդ.), Սան Ջովաննի մկրտարանը (V դ.), Կաստել դել Օվո (շին–յունն սկսվել է XII դ–ում) և Կաստել Նուովո (XIII–XV դդ.) դղյակները, մասամբ բարոկկոյի վերափոխված գոթ. եկեղեցիներ՝ Սան Լորենցո (շին–յունն սկսվել է XIII դ–ում), Սան Դոմենիկո (շին–յունն սկսվել է XIII դ–ի վերջին), Սանտա Մարիա դել Կարմինե (XIII–XVIII դդ.), տաճար (XIII–XX դդ.), Վերածնունդ և բարոկկոյի ոճերով բազմաթիվ պալատներ ու եկեղեցիներ ևն:

Ն–ում դեռևս վաղ միջնադարում բնակվել են հայեր, գործել է Սբ Գրիգոր Հայի եկեղեցին: Հիշվում են նաև Սբ Հոգի հայկ. եկեղեցին (1328) և «Հայոց տունը» (1356): Ներկայում Ն–ում կազմակերպված հայ համայնք չկա:

ՆԵԱՊՈԼԻ ԾՈՑ (Golfo di Napoli), Տիրենյան ծովի մաս Ապենինյան թ–կղզու ափերի մոտ: Երկ.՝ 22 *կմ*, լայն. մուտքի մոտ՝ 30 *կմ*, խոր.՝ մինչև 451 *մ*: Արլ. ափի մոտ է Վեզուվ հրաբուխը, հվ–ում՝ Կապրի կղզին:

ՆԵԱՊՈԼԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ Ֆրիդրիխ II–ի անվան, հիմնադրվել է 1224–ին Իտալիայում՝ որպես Սիցիլիայի թագավորության պետ. բուհ: Ունի հարուստ գրադարան (1615–ից, շուրջ 800 հզ. անուն գիրք): 2015–ին ուներ ավելի քան 100 հզ. ուսանող:

ՆԵԲՐԱՍԿԱ (Nebraska), նահց ԱՄՆ–ի կենտր. մասում՝ Միսսուրի գետի ավազանում: Տարածքը՝ 200 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,5 մլն (1978): Վարչ. կենտրոնը՝ *Լինքոլն*:

ՆԵԲՐՈՎԼԹ, *Բել* աստծու աստվածաշնչ. անվանումը: Հիշատակվում է որպես Քամյան Քուշի որդի: Ըստ առասպելի՝ Ն. տիրել է Սենաար երկիրը (Բաբելոնիա), հիմնադրել կամ վերակառուցել է Բաբելոն, Արեք, Աքքադ, Քաղանե և Նինվե ք–ները: Աստվածաշնչի մեկնիչները երբեմն Ն–ին են վերագրում նաև Բաբելոնի աշտարակաշինությունը: Հայկ. ավանդություններում Ն–ի անունն առնչվում է *Նեմրութի* հետ:

ՆԵԳԱՆՈՎ Վասիլի Իվանովիչ (1899–1978), ռուս նավաշինարար: Սոց. աշխ. հերոս (1960): «Լենին» ատոմ. սառցահատի և այլ նավերի գլխ. կոնստրուկտոր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942):

ՆԵԳԱՏԻՎԻԶՄ (լատ.՝ negativus – բացասական) (բժշկ.), հոգեկան խանգարման ախտանշան, որի դեպքում հիվանդներն անիմաստ դիմակայում են արտաքին ազդեցություններին, հրաժարվում կատարել որևէ խնդրանք (պասսիվ Ն.) կամ հակառակն են անում:

ՆԵԳԻՆ Եվգենի Արկադևիչ (1921–1998), մեխանիկայի և գազադինամիկայի բնագավառի ռուս. գիտնական: Գեն–լեյտ–ճարտարագետ (1978): ՌԳԱ ակադ. (1979): Սոց. աշխ. հերոս (1956): Աշխ–ները վերաբերում են միջուկ. զենքի մշակմանը և հզորության բարձրացմանը, պայթյունա– և հրդեհավտանգ միջուկ. լիցքերի համակարգերի ստեղծմանը:

ԽՍՀՄ Պետ. (1951, 1953, 1985), Լենինյան (1959) մրց–ներ:

ՆԵԳՈՎՄԿԻ Վլադիմիր Ալեքսանդրովիչ (1909–2003), ռուս ախտաբան–ֆիզիոլոգ, ռեանիմատոլոգների ռուս. դպրոցի և աշխարհում առաջին Ընդհ. ռեանիմատոլոգիայի ԳՀԻ հիմնադիրներից: ԲԳԱ ակադ. (1975): Հայտնաբերել է նոր նոզոլոգիական (հիվանդագիտ.) միավոր:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1952, 1970):

ՆԵԳՐԻ (Negri) Ադա (1870–1945), իտալացի բանաստեղծուհի: Հեղինակ է «Ճակատագիր» (1892, հայ.՝ 1919), «Մրրիկներ» (1896, հայ.՝ 1924), «Արտաքսում» (1914) ժող–ների: Հայ. հրատարակվել է նաև «Բանաստեղծություններ» (1909) ժող–ը:

ՆԵԳՐՈՒԴ ԱՄԱՄ, նեգրա–ավստրալոիդ ռասայի աֆրիկ. ճյուղը: Բնորոշ են մուգ մաշկը, գանգուր մազերը, լայն քիթը, հաստ շրթունքները, ծնոտի ցցվածությունը:

ՆԵԳՐՈՆ (Negros), կղզի Ֆիլիպինյան կղզեխմբում: Տարածքը՝ 12,7 հզ. *կմ*^{2}, բն.՝ 4,2 մլն (2010): Ռելիեֆը լեռնային է, բարձր.՝ մինչև 2460 *մ*: Տարածված են արևադարձ. անտառներն ու սավաննաները: Խոշոր ք–ները՝ Բակալոդ, Դումագետե (Ֆիլիպիններ):

ՆԵԳԲԱՅԼՈ Անատոլի Կոնստանտինովիչ (1923–2008), ԽՍՀՄ ավիացիայի գեն–մայոր (1976): ԽՄ կրկնակի հերոս (1945): ՀՄՊ–ի ժամանակ՝ կործանիչ ավիացիայում էսկադրիլիայի հրամ., կատարել է 219 մարտ. թռիչք:

ՆԵԳԵԼԻՆ Միտրոֆան Իվանովիչ (1902–1960), ԽՍՀՄ հրետանու գլխ. մարշալ (1959): ԽՄ հերոս (1945): ՀՄՊ–ի ժամանակ՝ մի շարք բանակների և ռազմաճակատների հրետանու հրամ.: 1955–ից՝ ԽՍՀՄ պաշտպ–յան փոխնախարար, 1959–ից, միաժամանակ՝ Ռազմավար. նշանակության հրթիռ. զորքերի գլխ. հրամ.:

ՆԵԵԼ, Néel Լուի Էժեն Ֆելիքս (1904–2000), ֆրանսիացի ֆիզիկոս: ՌԳԱ արտ. անդամ (1958): Աշխ–ները վերաբերում են մագնիսականությանը: Կանխատեսել է (1932) հակաֆեռոմագնիսականությունը, մշակել նրա տեսությունը, ստեղծել ֆեռիտների տեսությունը: Նոբելյան մրց. (1970):

ՆԵԵԼԻ ԿԵՏ, **Կյուրիի հակաֆեռոմագնիսական կետ**, ջերմաստիճան (θ_N, T_N), որից բարձր ջերմաստիճաններում անհետանում է հակաֆեռոմագնիսների ինքնակամ (սպոնտան) մագնիսացվածությունը, և դրանք դառնում են պարամագնիսներ (2–րդ կարգի ֆազ. անցում): Անվանվել է ի պատիվ Լ. *Նեելի*:

ՆԵԵՐ (Neher) Էրվին (ծ. 1944), գերմանացի կենսաֆիզիկոս: Հիմն. աշխ–ները (Բ. *Զակմանի* հետ) վերաբերում են բջջաթաղանթի վրա էլ. պոտենցիալների սևեռման մեթոդներին և նրանց կիրառմանը բջիջների տարբեր տիպերում՝ միակի իոնային խողովակների կառուցվածքի և ֆունկցիայի ուսումնասիրման համար:

Նոբելյան մրց. (1991, Բ. Զակմանի հետ):

ՆԵԺԴԱՆՈՎԱ Անտոնինա Վասիլևնա (1873–1950), ռուս. երգչուհի (քնարակոլորատուր. սոպրանո): ԽՍՀՄ ժող. արտիստ (1936): Սոց. աշխ. հերոս (1925): 1902–ից՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մենակատարուհի (Անտոնինդա՝ Մ. Ի. Գլինկայի «Իվան Սուսանին», Վիոլետա՝ Ջ. Վերդիի «Տրավիատա», Էլզա՝ Ռ. Վագների «Լոհենգրին», ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1943):

ՆԵՅԶՎԵՍՏՆԻ (Neizvestny) Էռնստ Իոսիֆովիչ (1925–2016), հրեա քանդ., գրաֆիկ: Ռուսաստանի գեղարվ–ի ակադ–ի պատվ. անդամ (2004): 1977–ից՝ ԱՄՆ–ում: Ստեղծել է արտահայտիչ, հզոր պլաստիկայով հաստոց. գործեր («Գիգանտամոնություն», «Դիմակներ», շարք), հուշարձաններ (Ն. Ս. Խրուշչովի մահարձանը Նովոդևիչի գերեզմանատանը, Մոսկվա, 1974), էսքիզներ և կոմպոզիցիոն մոդելներ («Կենաց ծառ», «Լոտոսի ծաղիկը», հուշարձան Աուսանում, 1971), ԳՈՒԼԱԳ–ի զոհերին նվիրված հուշարձանը Մագադանում (1996) ևն: ՌԴ Պետ. մրց. (1995):

ՆԵԼԵՊՊ Գեորգի Միխայլովիչ (1904–1957), ռուս. երգիչ (դրամատիկ. տենոր): ԽՍՀՄ ժող. արտիստ (1951): Ռուս. վոկալ դպրոցի նշանավոր ներկայացուցիչ: 1929–44–ին՝ Լենինգրադի ՕԲԹ–ի, 1944–ից՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մենակատար (Գերման՝ Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դամա», Ռադամես՝ Ջ. Վերդիի «Աիդա», Ֆլորեստան՝ Լ. վան Բեթհովենի «Ֆիդելիո», ևն):

ԽՍՀՄ Պետ. մրց. (1942, 1949, 1950):

ՆԵԼԼԵՐ (Kneller) Գոդֆրի, սըր (1646/49–1723), անգլիացի գեղանկարիչ (ծագումով՝ գերմանացի): 1675–ից՝ Անգլիայում, 1688–ից՝ թագավորի գլխ. նկարիչ: Հեղինակ է Ջ. Լոքի, Ջ. Դրայդենի (երկուսն էլ՝ 1697), Ի. Նյուտոնի (1702), Կ. Ռենի (1711), անգլիացի ազնվականների դիմանկարների:

ՆԵԼՄԱ, (Stenodus leucichthys nelma), *սիգաձկների* ընտանիքի ձուկ. սպիտակաձկների ենթատեսակ: Երկ.՝ մինչև 1,3 *մ*, կ. զ.՝ մինչև 40 *կգ*: Հանդիպում է Հս. սառուցյալ օվկ–ի ավազանում: Արդյունագործ. ձուկ է:

ՆԵԼՍՈՆ (Nelson) Հորացիո (1758–1805), վիկոնտ (1801), բրիտանացի փոխծովակալ (1801): Մի շարք մարտերում հաղթել է Ֆրանսիայի և Իսպանիայի նավատորմերին (այդ թվում՝ նաև Աբուքիրում և Տրաֆալգարում (վերջինում մահացու վիրավորվել է)):

ՆԵԼՍՈՆ, գետ Կանադայում: Երկ.՝ 640 *կմ*, ավազանը՝ 1,07 մլն *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 2700 *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Վիննիպեգ լճից և թափվում է Հուդզոնի ծոց: Նավարկելի է 100 *կմ*:

ՆԵԽՈՒԽ (Apium), **լախուր**, ***նեխուրազգիների*** ընտանիքի միա–, երկ– և բազմամյա

խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 20 տեսակ: Բուրավետ Ն–ի վայրած ձևերը բանջարաբույսեր են (տերևներում, արմատներում պարունակվում են շաքարներ, սպիտակուց, C վիտամին, եթերայուղեր, հանք. աղեր ևն): Բժշկության մեջ կիրառվում է հևոցի և այլ հիվանդությունների ժամանակ, նաև տարբեր ճաշատեսակների, թթուների, պահածոների մեջ:

ՆԵԽՈՒԿԱԶԳԻՆԵՐ (Apiaceae), **հովանոցավորներ**, երկշաքիլ բույսերի ընտանիք: Խոտաբույսեր են, հազվադեպ՝ թփեր, ոչ մեծ ծառեր և խոտ. լիաններ: Հայտնի է մոտ 4000 տեսակ (ավելի քան 470 ցեղ)՝ տարածված գրեթե ողջ երկրագնդում: Ծաղկաբույլը բարդ է, հազվադեպ՝ հովանոց կամ գլխիկ: Ն–ի մեջ կան սննդ. (գազար, նեխուր ևն), համեմունքաբուրավետացնող (քեմոն, գինձ ևն), դեղորայք. (բոխնի ևն), թունավոր (հատկապես՝ մոլեխինդը) տեսակներ, մոլախոտեր:

ՆԵԿԿԱՐ (Neckar), գետ Գերմանիայի հվ–արմ–ում, Հռենոսի աջ վտակը: Երկ.՝ 371 *կմ*, ավազանը՝ շուրջ 14 հզ. *կմ*², ջրի միջին ծախսը՝ 130 *մ*³/*վ*: Նավարկելի է: Ն–ի ափին են Շտուտգարտ, Մանհեյմ ք–ները:

ՆԵԿՏԱՐ (հուն.՝ nektar), 1. օլիմպ. աստվածների ըմպելիքը հուն դից–յան մեջ, որը, ինչպես և ***ամբրոսիան***, պարգևում էր անմահություն և հավերժ. երիտասարդություն: Փխբ. իմաստով՝ անզուգ. համով ու բույրով ըմպելիք: 2. Քաղցրահամ հեղուկ, որն արտադրվում է մեղրատու բույսերի ***նեկտարանոցներում*** և գրավում է ծաղիկները փոշոտող միջատներին ու որոշ թռչունների: Մեղուների առքի կարևորագույն մասն է:

ՆԵԿՏԱՐԱԿԵՐՆԵՐ (Nectariniidae), ճնճղուկանմանների կարգի թռչունների ընտանիք: Երկ.՝ 9–25 *սմ*: Հայտնի է ավելի քան 100 տեսակ՝ Աֆրիկայում, Հվ. Ասիայում և Ավստրալիայում: Սնվում են միջատներով և ծաղիկների ***նեկտարով*** (այստեղից՝ անվանումը): Նպաստում են ծաղիկների փոշոտմանը:

ՆԵԿՏՈՆ (հուն.՝ nektos – լողացող), ակտիվ լողացող, ջրի հոսանքին դիմակայելու և զգալի տարածություն տեղաշարժվելու ունակ կենդանիների ամբողջություն: Ն–ի շարքից են կաղամարները, ձկները, ծով. օձերն և կրիաները, պինգվինները, կետերը, մաշկոտանիները:

ՆԵԿՐԱՍՈՎ Ալեքսանդր Իվանովիչ (1883–1957), ռուս մեխանիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1946): Աշխ–ները վերաբերում են անսեղմելի հեղուկի ալիք. շարժմանը, սեղմելի և անսեղմելի հեղուկով պրոֆիլի շիթային շրջահոսմանը, մածուցիկ հեղուկում մրրիկի դիֆուզիային: ԽՍՀՄ Պետ. մրց. (1952):

ՆԵԿՐԱՍՈՎ Բորիս Վլադիմիրովիչ (1899–1980), ռուս քիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1946): Աշխ–ները վերաբերում են տես. քիմիային: Հայտնի է ընդհ. քիմիայի հիմնարար դասագրքով:

ՆԵԿՐԱՍՈՎ Նիկոլայ Ալեքսեևիչ (1821–1877/78), ռուս բանաստեղծ: 1847–66–ին՝ «Սովրեմեննիկ» ամսագրի խմբ–հրտ–ը, 1868–ից՝ «Օտեչեստվեննիե զապիսկի» ամսագրի խմբ. (Մ. Ե. Սալտիկովի հետ): Պատկերել է քաղաք. ցածր խավի, գյուղացիների առօրյա կենցաղը, կանանց ճակատագիրը, մանկության աշխարհը: «Զարչիներ» (1861), «Սառնամանիք, կարմիր քիթ» (1864), «Ռուս կանայք» (1871–72), «Ով է Ռուսիայում լավ ապրում» (1866–76, հայ.՝ 1946) պոեմներում ստեղծել է ռուս. կյանքի, առաջին հերթին՝ համաժող. երջանկություն երազող գյուղացիության բազմակերպար պատկերը: Հեղինակ է նաև «Ժամանակակիցները» (1875–76) երգիծ. պոեմի, «Վերջին երգերը» (1877) բանաստեղծությունների շարքի, նաև արձակ, գրաքննադատ. գործերի: Հայ. հրատարակվել են նաև «Բանաստեղծություններ» (1953, 1962, 1971) ժող–ները:

ՆԵԿՐԱՍՈՎ Նիկոլայ Նիկոլաևիչ (1906–1984), ռուս տնտեսագետ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1968): Աշխ–ները վերաբերում են արտադրող. ուժերի տեղաբաշխմանը, տնտ. ճյուղերի էկոնոմիկային: ԽՍՀՄ Պետ. մրց. (1970):

ՆԵԿՐԱՍՈՎ Նիկոլայ Նիկոլաևիչ (1932–2012), ռուս դիրիժոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1988): 1957–ից՝ Մ. Ե. Պյատնիցկու անվ. ռուս. ժող. երգչախմբի, նվագախմբի, 1960–ից՝ ԽՍՀՄ ժող. պարի անսամբլի գլխ. դիրիժոր, 1973–2002–ին՝ Համամիութ. ռադիոյի և հեռուստատեսության ռուս. ժող. գործիքների նվագախմբի գլխ. դիրիժոր և գեղ. ղեկ.: ԽՍՀՄ Պետ. մրց. (1991):

ՆԵԿՐԱՍՈՎ Վիկտոր Պլատոնովիչ (1911–1987), ռուս գրող: 1974–ից՝ Ֆրանսիայում: Հեղինակ է «Ստալինգրադի խրամատներում» (1946, հայ.՝ 1948, կինոնկար՝ «Զինվորները», 1957), «Հարազատ քաղաքում» (1954), «Կիրա Գեորգիևնա» (1961) վիպակների, «Անբանի նոթերը» (1975), «Պատի երկու կողմերում…» (1978–79), «Փոքրիկ, տխուր վիպակ» (1986) և այլ գործերի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1947):

ՆԵԿՐՈԲԱԿՏԵՐԻՈԶ, **նեկրոբացիլոզ**, ընտանի կենդանիների (առավելապես՝ հս. եղջերուների, այծերի, խոշոր եղջերավորների, խոզերի, ձիերի, հավերի) և վայրի կենդանիների մի շարք տեսակների վարակիչ հիվանդություն, որը հարուցվում է անօդակյաց բակտերիաներով: Բնորոշ է հատկապես վերջույթների ստորին մասերի հյուսվածքների թարախամեռուկային քայքայումը: Վարակվում են մնասված մաշկի կամ լորձաթաղանթների միջոցով: Հիվանդ կենդանիներից մարդը կարող է վարակվել:

ՆԵԿՐՈԲԻՈԶ (< հուն. nekros – մահացած և bios – կյանք), մահվանը նախորդող փոփոխություններ բջջում: Ուղեկցվում է նյութափոխանակության խանգարումներով, որոնք կարող են հանգեցնել ճարպ. կամ այլ կազմափոխությունների: Վերջիններս կարող են լինել դարձելի (տես ***Տարաճում***): Ն–ի առավել բնորոշ նշաններն են բջջակորիզի փոփոխությունները (կնճռոտում, քայքայում և լուծում), բջջապլազմայի մածուցիկության, բջջի ներկվելու ունակության խանգարումները և ֆերմենտ. համակարգերի կազմալուծումը, որը կարող է հանգեցնել ինքնալուծման:

ՆԵԿՐՈԶ, տես ***Մեռուկացում***:

ՆԵԿՐՈՇՅՈՒՍ (Nekrošius) Էյմունտաս (ծ. 1952), լիտվացի ռեժ.: Լիտվ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1986): 1998–ին ստեղծել է իր «Մենո ֆորտաս» սեփ. թատերախումբը: Բեմադրել է «Քառակուսի» (ըստ Վ. Ֆ. Ելիսեևայի «Հենց այդպես էլ կար» վեպի, 1980), «Եվ դարից երկար ձգվում է օրը» (ըստ Չ. Տ. Այթմատովի, 1983), Ա. Պ. Չեխովի «Քեռի Վանյա» (1986), «Երեք քույր» (1995), «Ապուշը» (ըստ Ֆ. Մ. Դոստոևսկու, 2009) և այլ գործեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1987):

ՆԵԼՈՍ (լատ.՝ Nilus), աստվածություն Հին Եգիպտոսում, առաջացել է ***Նեղոս*** գետի պաշտամունքից: Հելլենիստ. դարաշրջանում հույները Ն–ին համարել են օվկ–ի որդին և Եգիպտոսի 1–ին թագավորը՝ նրան վերագրելով ոռոգման հնագույն համակարգի կառուցումը: Պատկերվել է մորուքավոր մարդու տեսքով:

ՆԵՂՈՍ (արաբ. անվանումը՝ էլ Բահր), գետ Աֆրիկայում: Աշխարհի ամենաերկար գետն է: Երկ.՝ 6671 *կմ*, ավազանը՝ 2870 հզ. *կմ*², Ասուանի մոտ ջրի միջին ծախսը՝ 2600 *մ*³/*վ*, առլզն՝ 15000 *մ*³/*վ*, նվզզն՝ 500 *մ*³/*վ*: Ակունքը համարվում է Ռուկարարա գետը, որը սկիզբ է առնում Արևելաաֆրիկ. սարահարթից, հոսում Վիկտորիա լճով: Վերջինից դուրս գալուց հետո կոչվում է Վիկտորիա Ն., իսկ Կիոգա և Մոբուտու Սեսե Սեկո լճերով անցնելուց հետո՝ Բահր էլ Ջեբել, էլ Գազալ վտակին միախառնվելուց հետո՝ Սպիտակ Ն.: Կապույտ Ն. ընդունելուց հետո կոչվում է Ն., որը, գետաբերանում առաջացնելով 22 հզ. *կմ*² դելտա, թափվում է Միջերկր. ծով: Գլխ. վտակները՝ Ատբարա, Սոբատ, Կապույտ Ն.: Ն–ի հովիտը հնագույն քաղաքակրթության կենտրոններից է: Ջրերը դեռևս հնուց օգտագործվել են ջրամատակարարման, դաշտերի ոռոգման և բնական (տիղմով) պարարտացման համար: Ն–ի վրա եղել է նավարկություն, զբաղվել են ձկնորսությամբ:

ՆԵՂՏԵՐԵՎԻ (Chamaenerion), ապուզանազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 20 տեսակ՝ 2 կիսագնդերի արտաարևադարձ. գոտիներում, ՀՀ–ում՝ 3 (նեղատերև, Ստևենի, Դոդոնի)՝ Գեղարքունիքի, Լոռու, Վայոց ձորի, Սյունիքի և այլ մարզերում: Դեղաբույս է. պարունակում է ասկորբինաթթու, կարոտին, աղաղանյութեր: Պատրաստուկներն օգտագործում են որպես կապող, արյունահոսությունը դադարեցնող, վերքերը լավացնող միջոց: Տերևներից և արմատներից պատրաստում են աղցաններ ևն: Մեղրատու է:

ՆԵՂՈՒՅԻ ՎԱՆՔ, ճարտ. համալիր ՀՀ Կոտայքի մարզի Արզական գ–ից 3 *կմ* հս–արմ.: Բաղկացած է Սբ Աստվածածին եկեղեցուց (X–XI դդ.), գավթից և առանձին մատուռից: Եկեղեցին գմբեթավոր դահլիճ է՝ 4 անկյուններում ավանդատներով: Գավիթը հատակագծով ուղղանկյուն է՝ 4 ազատ կանգնած սյուներով: Կենտր. հատվածի ծածկը 6 խաչվող կամարներով է:

ՆԵՂՈՒՑՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ, բաց ծովերը միմյանց միացնող համաշխ. նշանակության նեղուցները: Ն. մ. են Բոսֆորի և Դարդանելի, Ջիբրալթարի, Մագելանի, Սանգայի, Կորեական նեղուցները ևն: Շահագործվում է բաց ծովերի ազատության սկզբունքով:

ՆԵՂՔԻԹ ԿԱՊԻԿՆԵՐ (Catarrhini), ***պրիմատների*** կարգի կաթնասունների 4 ընտանիքի ընդհ. անվանումը:

ՆԵՄԱՆ (լիտվ.՝ Նյամունաս, Nemunas), գետ Բելառուսում, ՌԴ–ում և Լիտվայում: Երկ.՝ 937 *կմ*, ավազանը՝ 98,2 հզ. *կմ*², ջրի միջին ծախսը՝ 678 *մ*³/*վ*: Սկիզբ է առնում Մինսկի բարձր–յունից, հոսում Ն–ի ցածրավայրով, առաջացնելով դելտա՝ թափվում Բալթիկ ծովի Կուրշիի ծոցը: Ջրանցքներով միանում է Դնեպրին և Վիսլային: Ափերին է Կաունասը:

ՆԵՄԱՏՀԵԼՄԻՆԹՆԵՐ, **առաջնախոռոչավոր որդեր**, անողնաշարների տիպ:

Մարմնի հիմն. խոռոչը մարմնի պատի և ներքին օրգանների միջև է: Շնչառ. և արյունատար համակարգեր չունեն: Հայտնի է մոտ 18 հզ. տեսակ: Դասերն են՝ թելորդեր, փորաթարթչավորներ, կամպտոզոներ, կինորինխներ, անվաորդեր, կլոր որդեր, պրիապուլիդներ և կարթաճիճուներ:

ՆԵՄԱՏՈԴՆԵՐ (Nematoda), **կլոր որդեր**, առաջնախոռոչավոր որդերի դաս: Երկ. 80 *մկմ*–8 *մ*: Հայտնի է մոտ 20 հզ. տեսակ: Ավելի քան 7 հզ–ը բույսերի, կենդանիների և մարդու (անկիլոստոմիդներ, սինգամներ, ոջլտուն ևն) մակաբույծներ են: Ազատ ապրող տեսակները ապրում են ծովերում, քաղցրահամ ջրամբարներում և հողում: Առաջացնում են բույսերի նեմատոդային հիվանդություններ, մարդու և կենդանիների նեմատոդոզներ:

ՆԵՄԵԹ (Németh) Լասլո (1901–1975), հունգար գրող: Հեղինակ է «Սուգ» (1936), «Մեղք» (1936), «Էսթեր Էգեւտյո» (1956), «Գթասրտություն» (1965) վեպերի, «Գալիլեյ» (1953), «Գանդիի մահը» (1963) պատմ. դրամաների:

ՆԵՄԵՆՍԿԻ Բորիս Միխայլովիչ (ծ. 1922), ռուս. գեղանկարիչ: ՌԽՖՍՀ ժող. նկարիչ (1986): ՌԿԱ (1992), Ռուսաստանի գեղարվ–ի ակադ–ի (2009) ակադ.: Հեղինակ է ՀՄՊ–ի թեմաներով դրամատիկ. նկարների («Անանուն բարձունք», 1961, ևն), քնար. կոմպոզիցիաների («Օտար կյանքեր», շարք, 2001–04) ևն:

ԽՍՀՄ (1951), ՌԴ (1996) Պետ. մրց–ներ:

ՆԵՄԵՍԻՍ (Nemasis), վրիժառության, հատուցման թևավոր աստվածուհին հուն. դից–յան մեջ. պատժել է հաս. և բարոյական նորմերը խախտողներին: Պատկերվել է կնոջ կերպարանքով՝ հսկիչ (կշեռք, սանձ), պատժիչ (սուր կամ մտրակ), արագության (թևեր, կառք) պիտույքներով: Ն–ի անունով է կոչվել հայ վրիժառուների *«Նեմեսիա»* գործողությունը:

«ՆԵՄԵՍԻՍ», գործողություն, որի նպատակն ահաբեկման միջոցով 1915–ի Հայոց ցեղասպանությունը կազմակերպած և իրականացրած «Միություն և առաջադիմություն» կուս–յան երիտթուրք. պարագլուխներին պատժելն էր: Կոչվել է հուն. աստվածուհի *Նեմեսիսի* անունով: Ծրագիրը մշակել է ՀՅԴ կուս–յան IX ընդհանուր ժողովը (1919, Երևան): Նշվել են շուրջ 650 հանցագործների անուններ, առանձնացվել 41 գլխավորները: Ստեղծվել է Պատասխանատու մարմին (ղեկ.՝ *Արմեն Գարո*), Հատուկ ֆոնդ ևն: Հանցագործներին հայտնաբերելու գործը ղեկավարել է Հրաչ *Փափազյանը*: «Ն.»–ի կազմակերպչ. հիմնական կենտրոնը «Ճակատամարտ» *(«Ազատամարտ»*, Կ. Պոլիս) թերթի խմբագրատունն էր:

1921–22–ին սպանել են Թալեաթին (Սողոմոն *Թեհլերյան*, Բեռլին), Սայիդ Հալիմին (Արշավիր *Շիրակյան*, Հռոմ), Ջեմալ Ազիմին, Բեհաէդդին Շաքիրին (Արշավիր Շիրակյան, Արամ *Երկանյան*, Բեռլին), Ջեմալին (Պետրոս Տեր–Պողոսյան, Արտաշես *Գևորգյան* և ուր., Թիֆլիս) և այլ հանցագործների: Վրիժառուները վերացրել են նաև 1918–ի սեպտ–ին Բաքվում հայերի կոտորածի կազմակերպիչ ադրբ. մուսավաթ. կառ–յան մի քանի գործիչների: 1926–ին «Ն.»–ի գործողությունները դադարեցվել են ՀՅԴ բյուրոյի որոշմամբ:

ՆԵՄԵՍԻՈՒՍ ԷՄԵՍԱՑԻ (IV դ–ի 2–րդ կես–V դ.), բյուզանդացի աստվածաբան: Սիրիայի Էմեսա ք–ի եպս.: Հեղինակ է «Մարդու բնության մասին» աշխ–յան, որտեղ ի մի է բերել անտիկ շրջանի փիլ. և բժշկ. դպրոցների ֆիզիոլոգ., հոգեբ. և փիլ–մարդաբան. տեսությունները՝ ձգտելով համաձայնեցնել միմյանց և քրիստ. աստվածաբանության դոգմաների հետ:

ՆԵՄԻՐՈՎԻՉ–ԴԱՆՉԵՆԿՈ Վասիլի Իվանովիչ (1848/49–1936), ռուս. գրող (մայրը՝ Ա. Յաղուբյան): Վ. Ի. *Նեմիրովիչ–Դանչենկոյի* եղբայրը: 1921–ից՝ վտարանդի: Հեղինակ է բազմաթիվ գեղ–ազգագր. ակնարկների, զինվ. թղթակցությունների («Պատերազմի տարին», հ. 1–3, 1878–79), նաև վեպերի, պատմվածքների, հուշերի («Գերեզմանոցներում», 1921):

ՆԵՄԻՐՈՎԻՉ–ԴԱՆՉԵՆԿՈ Վլադիմիր Իվանովիչ (1858–1943), ռուս. (մայրը՝ Ա. Յաղուբյան) ռեժ., թատեր. գործիչ, գրող: ԽՍՀՄ ժող. արտիստ (1936): Վ. Ի. *Նեմիրովիչ–Դանչենկոյի* եղբայրը: ՄԳԹ–ի (1898, Կ. Վ. *Ստանիսլավսկու* հետ), նրան կից երաժշտ. ստուդիայի (1926–ից՝ Վ. Նեմիրովիչ–Դանչենկոյի անվ. երաժշտ. թատրոն, 1941–ից՝ Մոսկվայի Կ. Վ. Ստանիսլավսկու և Վ. Նեմիրովիչ–Դանչենկոյի անվ. երաժշտ. թատրոն) հիմնադիրը: Բեմադրել է Վ. Շեքսպիրի «Հուլիոս Կեսար» (1903), «Կարամազով եղբայրներ» (1910, ըստ Ֆ. Մ. Դոստոևսկու), «Աննա Կարենինա» (1937, ըստ Լ. Ն. Տոլստոյի), Մ. Գորկու «Թշնամիներ» (1935), Ա. Պ. Չեխովի «Երեք քույր» (1940), Ն. Ֆ. Պոգոդինի «Կրեմլյան կուրանտներ» (1942) և այլ գործեր: Հեղինակ է պիեսների («Նոր գործ», բեմ.՝ 1890, ևն), վեպերի («Հին տուն», 1895, «Դրամա հետնաբեմում», 1896), պատմվածքների: «Կյանքի արժեքը» պիեսը հայ բեմում բեմադրվել է 1900–10–ական թթ–ին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942, 1943):

ՆԵՄՉԻՆՈՎ, Վասիլի Սերգեևիչ (1894–1964), ռուս տնտեսագետ և վիճակագիր: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1946): Աշխ–ները վերաբերում են վիճակագրության տեսությանն ու պրակտիկային, աշխ–ի արտադրողականության ուսումնասիրմանը, պլան. տնտ–յան մոդելների մշակմանը:

ԽՍՀՄ Պետ. (1946), Լենինյան (1965, հետմահու) մրց–ներ:

ՆԵՄՐՈՒԹ, Նեմրուդ, Սարակն, հրաբուխ Հայկ. լ–աշխարհում՝ Վանա լճի արմ. ափին: Բարձր.՝ 3050 *մ*, հիմքի շրջագիծը՝ մոտ 50 *կմ*: Հվ–արլ. լանջերը զառիթափ են, արմ–ը զառիկող իջնում են դեպի Մշո դաշտ: 2400 *մ* բարձր–յան վրա Ն–ի խառնարանի կիսաշրջանաձև լիճն է (մակերեսը՝ 9 *կմ*²): Ն–ի վերջին ժայթքումը եղել է 1441–42–ին:

Ն. լ–ան վրա XIX դ–ում հայտնաբերվել է Կոմմագենեի Անտիոքոս Ա Երվանդունի թագավորի (մ. թ. ա. 69–34) կառուցած դամբարանաբլուր–սրբավայրը, որի արլ. և արմ. կողմերում դրված են արձանները (կրաքարե խոշոր վեմերից, մինչև 8 *մ* բարձր.), բարձրաքանդակներով ու արձանագրություններով այլ կոթողներ: Մեջտեղում Զևս– Արամազդի արձանն է, մի կողմում՝ Ապոլոն–Միհր–Հելիոս–Հերմեսի և Արտագնես–Հերակլեսի, մյուս կողմում Կոմմագենե երկրի դիցուհու և Անտիոքոս Ա–ի արձաններն են: Գահավորակների թիկունքին Անտիոքոս Ա–ն թողել է հուն. մեծ արձանագրություն, որտեղ հիմնավորվում է դամբարան–սրբավայրի կառուցման անհրաժեշտությունը ևն, նաև վկայում է, որ Կոմմագենեի թագավորատունը սերում է Երվանդունիներից, և մ. թ. ա. IV–III դդ–ում Կոմմագենեն Հայաստանի մաս է կազմել: Սրբավայրը բացառիկ սկզբնաղբյուր է Հայաստանի հելլենիստ. դարաշրջանի պատմության ու մշակույթի ուսումնասիրման համար:

ՆԵՄՅՈՎԱ (Němcová) Բոժենա (1820–1862), չեխ գրող: Չեխ. արդի արձակի հիմնադիրը: Հայտնի է Ն–ի «Տատիկը» (1855, հայ.՝ 1981) վիպակը: Հեղինակ է նաև «Վայրի Բարան» (1856) և այլ պատմվածքների, «Ամրոցում և ամրոցի մոտ (1856) և այլ վիպակների, «Ժողովրդական հեքիաթներ ու ավանդություններ» (մաս 1–7, 1845–47) ժող–ի և այլ գործերի: Հավաքել և չեխ. թարգմ–յամբ հրատարակել է «Սլովակյան հեքիաթներ» (1857–58) ժող–ը:

ՆԵՅ (Ney) Միշել (1769–1815), Ֆրանսիայի մարշալ (1804), *Նապոլեոն I*–ի զինակիցներից: Մասնակցել է հեղ. և *Նապոլեոնյան պատերազմներին*: Աուստերլիցի, Ենայի ճակատամարտերում և 1812–ի ֆրանս–ռուս. պատերազմում՝ կորպուսի հրամ.: «*Հարյուր օր*»–ից հետո գնդակահարել են Բուրբոնները:

ՆԵՅԲԵՐԳ (Neuberg) Կառլ (1877–1956), գերմանացի կենսաքիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ արտ. թղթ. անդամ (1925): 1941–ից՝ ԱՄՆ–ում: Աշխ–ները վերաբերում են ածխաջրերի փոխանակությանը, խմորմանը, ֆերմենտներին: Հաստատել է ածխաջր. փոխանակության մեջ պիրոխաղողաթթվի որոշիչ դերը: Հայտնագործել է ֆրուկտոզո 6– ֆոսֆատը (Ն–ի եթեր), մի շարք ֆերմենտներ:

ՆԵՅՀԱՈՒԶ (Neuhaus) Հենրիխ Գուստավովիչ (1888–1964), ռուս. դաշնակահար, մանկավարժ (ծագումով՝ գերմանացի): ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1956): Հիմնադրել է դաշնամուր. դպրոց (Ս. *Ռիխտեր*, Է. *Գիլելս*, Յ. *Զակ*, Մ. Նեյհաուզ և ուր.): Որդին՝ **Ստանիսլավ Ն.** (1927–1980), դաշնակահար: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1978):

ՆԵՅՄԱՆ (Neumann) Ստանիսլավ Կոստկա (1875–1947), չեխ բանաստեղծ: Չեխոսլովակիայի ժող. արվեստագետ (1945): Հարել է սիմվոլիզմին («Ես նոր կյանքի առաքյալն եմ», 1896, ժող.) և պրոլետկուլտին [«Կարմիր երգեր» (1923) ժող–ը սոցիալ. ռեալիզմի առաջին գործերից է չեխ. պոեզիայում]: Հեղինակ է «Չեխական երգեր» (1910), «Նոր երգեր» (1918), «Սիրտ և ամպեր» (1935), «Անհուն տարի» (1945), «Ժանտախտի տարիներ» (1946) և այլ ժող–ների, «Ոսկե ամպ» (1932) վեպի և այլ գործերի:

ՆԵՅՄԱՆ Վիկտոր Գրիգորևիչ (ծ. 1933), ռուս օվկիանոսագետ: ՌԳԱ թղթ. անդամ (1990–ից): Աշխ–ները վերաբերում են ֆիզ. օվկիանոսագիտ–յանը, Համաշխ. օվկ–ի ջրաֆիզ. շարժընթացներին, խոշորամասշտաբ ծով. հոսանքների տարածաժամանակ. փոփոխություններին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1970):

ՆԵՅՄԱՆ Ֆրանց Էռնստ (1798–1895), գերմանացի ֆիզիկոս–տեսաբան, էլեկտրամագնիս. ինդուկցիայի առաջին մաթ. տեսության հեղինակը: Աշխ–ները վերաբերում են օպտիկային, առաձգ. ջերմահաղորդականության տեսությանը: Բացահայտել է բյուրեղի ձևի համաչափության կապը նրա ֆիզ. հատկությունների հետ (Ն–ի սկզբունք):

«ՆԵՅԾԸՆԸԼ ԲՐՈԴՔԱՍԹԻՆԳ ՔՈՄՓԱՆԻ» (ԷնԲիՍի, Nationol Broadcasting Company, NBC), ԱՄՆ–ի

3 ամենախոշոր միջազգ. առևտրային հեռուստառադիոմիավորումներից: Հիմնադրվել է 1926-ին Վաշինգտոնում (հեռուստացանցը՝ 1939-ից):

ՆԵՅՈԼՈՎԱ. Մարինա Մստիսլավովնա (ծ. 1947), ռուս. դերասանուհի: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1987): 1974-ից՝ Մոսկվայի «Սովրեմեննիկ» թատրոնի դերասանուհի (Վերոնիկա՝ Վ. Ս. Ռոզովի «Հավերժ ողջերը», Օլյա՝ Մ. Մ. Ռոշչինի «Շտապեք բարություն անել», Անֆիսա՝ Լ. Ն. Անդրեևի «Անֆիսա», Ռանևսկայա՝ Ա. Պ. Չեխովի «Բալենու այգին», ևն): Նկարահանվել է կինոյում («Մենախոսություն», «Պաշտպանական խոսք», «Աշնանային մարաթոն», «Բանտային ռոմանս» ևն):

ՌԽՖՍՀ (1981), ԽՍՀՄ (1990), ՌԴ (2000) Պետ. մրց-ներ:

ՆԵՅՈԼՈՎՆԵՐ, վաղ *կլասիցիզմի* շրջանի ճարտ-ներ, պուրակ. արվ-ի առաջին ռուս վարպետները: **Վասիլի Իվանովիչ Ն.** (1721/22–1879): Հայտնի են նրա «Անգլիական այգին» (1771–80), «Ծովակալություն» (1773–77) նորգոթ. ոճի տաղավարը Ցարսկոյե Սելոյում (այժմ՝ ք. Պուշկին): Որդին՝ **Իլյա Վասիլևիչ Ն.** (1745–1793), կառուցել է Լիցեյի մասնաշենքը (1788–92), Վերին և Ներքին լոգարանների տաղավարները (Ցարսկոյե Սելո, 1777–79):

ՆԵՅՍԵՐ (Neisser) Ալբերտ Լյուդվիգ (1855–1916), գերմանացի մաշկավեներաբան: Հայտնագործել է գոնոռեայի հարուցիչը (Ն–ի գոնոկոկ): Առաջարկել է բորի միկոբակտերիայի ներկման մեթոդ: Աշակել է (Ա. *Վասերմանի* հետ) սիֆիլիսի շճարան. ախտորոշման մեթոդ:

ՆԵՅՎԱ. (Neiva), ք. Կոլումբիայում, Ուիլա դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 345,8 հզ. (2016): Հիմնադրվել է 1539-ին:

ՆԵՅՏՐԻՆԱՅԻՆ ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, աստղագիտ-յան բաժին. ուսումնասիրում է տիեզ. օբյեկտները (Արեգակ, աստղեր ևն)՝ նրանցից եկող *նեյտրինոների* հոսքի միջոցով: Կազմավորվել է 1960-ական թթ-ին:

ՆԵՅՏՐԻՆՈ (իտալ.՝ neutrino, neutron-ի նվազականը) (υ), կայուն, չլիցքավորված տարր. մասնիկ՝ 1/2 սպինով և, հնարավոր է, զրոյական հանգստի զանգվածով: Պատկանում է *լեպտոնների* դասին: Ն. մասնակցում է միայն թույլ և գրավիտացիոն փոխազդեցություններին և այդ պատճառով չափազանց թույլ է փոխազդում նյութի հետ: Գոյություն ունեն էլեկտրոնի կամ պոզիտրոնի հետ կապված *էլեկտրոնային* Ն. ($υ_e$), մյուոնի հետ կապված *մյուոնային* Ն. ($υ_μ$) և ծանր τ լեպտոնի հետ կապված *τ* Ն. ($υ_τ$): Ն–ևերի յուրաքանչյուր տեսակ (բուրմունք) ունի իր հակամասնիկը ($\overline{υ_e}$, $\overline{υ_μ}$, $\overline{υ_τ}$), որը Ն–ից տարբերվում է համապատասխան լեպտոնի լիցքի նշանով և *պարույրությամբ*. Ն–ներն ունեն ձախ պարույրություն (սպինն ուղղված է Ն–ի շարժման հակառակ ուղղությամբ), իսկ հականեյտրինոները՝ աջ պարույրություն (սպինն ուղղված է շարժման ուղղությամբ):

ՆԵՅՏՐՈՆ (անգլ.՝ nuetron, < լատ. neuter – ոչ այս, ոչ այն) (n), զրոյական էլ. լիցքով, 1/2 սպինով և 1,008665 զ. ա. մ-ով (պրոտոնից 2,5 M_e–ով ավելի զանգվածով) տարր. մասնիկ. պատկանում է *բարիոններին*: Ազատ վիճակում Ն. անկայուն է և ունի մոտ 14,8 *ր* կյանքի տևողություն: Ն–ները պրոտոնների հետ կազմում են ատոմ. միջուկները, որոնցում Ն. կայուն է: Հայտնաբերել է Ջ. *Չեդվիկը*:

ՆԵՅՏՐՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, նյութի կառուցվածքի և հատկությունների ուսումնասիրության մեթոդների համախումբ՝ ցածր էներգիայի ($ε < 1$էՎ) նեյտրոնների ցրման միջոցով: Ն. հնարավորություն է տալիս ուսումնասիրելու կոնդեսացված միջավայրերում մասնիկների փոխադարձ տեղաբաշխումը (կառուցվածք. Ն.), իսկ նեյտրոնների մագնիս. մոմենտների շնորհիվ՝ նաև նյութի մագնիս. կառուցվածքը (մագնիս. Ն.):

ՆԵՅՏՐՈՆԱՅԻՆ ԱՍՏՂԵՐ, աստղեր, որոնք, ըստ տես. պատկերացումների, կազմված են հիմնականում *նեյտրոններից*: Ն. ա–ի նյութի նեյտրոնացումը հետևանք է աստղերի գրավիտացիոն կոլապսի՝ նրանցում միջուկ. վառելանյութի սպառումից հետո: Ն. ա–ի միջին խտ.՝ $≈2,8 · 10^{17}$ *կգ/մ³*, միջին շառավիղը՝ 20 *կմ*, զանգվածը՝ $M < 2M_⊙$ ($M_⊙$–ն Արեգակի զանգվածն է): Ն. ա. հայտնաբերել են իրենց իմպուլս. ռադիոճառագայթման շնորհիվ (տես *Բարախիչներ*):

ՆԵՅՏՐՈՆԱՅԻՆ ՌԱԶՄԱՄԹԵՐՔ, *նեյտրոնների* առատ ճառագայթմամբ միջուկ. ռազմամթերքի հատուկ տարատեսակ, որում օգտագործվում են ծանր միջուկների միջուկ. շղթ. ու թեթև միջուկների ջերմամիջուկ. ռեակցիաները:

ՆԵՅՏՐՈՆԱՅԻՆ ՍՊԵԿՏՐԱԴԻՏՈՒՄ, ատոմ. միջուկների հետ նեյտրոնների փոխազդեցության տարբեր շարժընթացների էներգ. կախվածությունների և առաջացած գրգռված միջուկների հատկությունների հետազոտման մեթոդների ամբողջություն:

ՆԵՅՏՐՈՆԱՅԻՆ ՕՊՏԻԿԱ, *նեյտրոնային ֆիզիկայի* բաժին. ուսումնասիրում է դանդաղ *նեյտրոնների* փոխազդեցությունը նյութի հետ այնպիսի պայմաններում, երբ հստակորեն դրսևորվում են նեյտրոնների ալիք. հատկությունները՝ դիֆրակցիան, ինտերֆերենցիան, բևեռացումը ևն:

ՆԵՅՏՐՈՆԱՅԻՆ ՖԻԶԻԿԱ, *նեյտրոնների* փնջերի օգնությամբ նյութի կառուցվածքի, նաև իրենց՝ նեյտրոնների հատկությունների ուսումնասիրություններ: Էլ. լիցք չունենալու պատճառով նեյտրոններն օժտված են ավելի մեծ թափանցելիությամբ, քան լիցքավորված մասնիկները: Նյութի ներսում նեյտրոնները հիմնականում փոխազդում են ատոմների միջուկների հետ, իսկ մեծ էներգիաների դեպքում՝ ատոմի կազմի մեջ մտնող առանձին նուկլոնների հետ և գործնականում «չեն նկատում» ատոմ. թաղանթների էլեկտրոններին: Նեյտրոն–միջուկ փոխազդեցության բնույթն ու ինտենսիվությունն էապես կախված են նեյտրոնների էներգիաներից և նեյտրոնների ու միջուկների սպինների փոխադարձ կողմնորոշումներից:

ՆԵՅՏՐՈՆՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, *նեյտրոնների* փնջերի ստացման սարքեր, որոնց գործողությունը հիմնված է նեյտրոնների առաջացումով *միջուկային ռեակցիաների* օգտագործման հիման վրա: Կան սրվակատիպ աղբյուրներ (զոդված սրվակի մեջ լցված է α–ակտիվ նուկլիդի և բերիլիումի խառնուրդ՝ $^{9}Be + α = {}^{12}C + n$): Որպես Ն. ա.՝ օգտագործվում են նաև լիցքավորված մասնիկների արագացուցիչներ և միջուկ. ռեակտորներ:

ՆԵՅՐՈ..., **ՆԱՐՐՈ...** (հուն.՝ neuron – նյարդ, ջիղ), բարդ բառերի սկզբնամաս. ցույց է տալիս նյարդ. համակարգին նրանց վերաբերելը: Համապատասխանում է հայ. նյարդա... բաղադրիչին բարդ բառերում (օր.՝ նյարդաֆիզիոլոգիա):

ՆԵՅՐՈԳԼԻԱ (< *նեյրո*... և հուն.՝ glia – սոսինձ), գլիա, գլխուղեղի և ողնուղեղի բջիջներ, որոնք լցնում են նյարդաբջիջների և ուղեղ. մազանոթների միջև եղած տարածությունը: Նեյրոնների համար կատարում է պաշտպ. և հենարանային ֆունկցիաներ, ապահովում նյարդ. հյուսվածքի հակազդող հատկությունները:

ՆԵՅՐՈԼԵՊՏԻԿ ԴԵՂԱՆՅՈՒԹԵՐ (< *նեյրո*... և հուն.՝ lepsis – ճանկում, նոպա), ուժեղ հակապսիխոզ. դեղանյութեր. ընկճում են ԿՆՀ–ի ֆունկցիաները և վերացնում կամ թուլացնում պսիխոզների որոշ ախտանշաններ (զառանցանք, զգայախաբություններ ևն):

ՆԵՅՐՈՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, հոգեբ-յան ճյուղ. ուսումնասիրում է ուղեղում տեղի ունեցող հոգեբ. կենսընթացներն ու նրանց կապը գլխուղեղի առանձին համակարգերի հետ: Ն. սկզբնապես համարվել է *նյարդաբանության* բաժին:

«ՆԵՅՐՈՔԻՄԻԱ», գիտ. եռամսյա հանդես (1982–92, Երևան, 1995-ից, Մոսկվա՝ ռուս., անգլ.): ՀՀ ԳԱԱ և ՌԳԱ համատեղ հրտ-յուն: Հիմնադիր-խմբ.՝ Արմեն Գալոյան, 2013-ից՝ համախմբ-ներ՝ Նատալյա Գուլյաևա, Միխայիլ Աղաջանով:

ՆԵՆԵՑԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ՕԿՐՈՒԳ, ՌԴ Արխանգելսկի մարզում՝ Հս-արմ. դաշն. օկրուգի կազմում: Ներառում է նաև Կոլգուև և Վայգաչ կղզիները: Տարածքը՝ 176,8 հզ. *կմ²*, բն.՝ 42 հզ. (2009): Ունի 1 քաղաք, 2 քտա: Կազմավորվել է 1929-ին (մինչև 1977-ը՝ Ննենց. ազգ. օկրուգ): Տարածքը հարթավայրային է: Գլխ. գետը՝ *Պեչորա*:

ՆԵՆԵՑԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, *սամոդիական լեզուներ*, ուգրա-ֆինն. լեզվաընտանիքի ճյուղ: Ներառում է *նենեցերենը*, էնեցերենը, նգանասաներենը և սելկուպերենը:

ՆԵՆԵՑԵՐԵՆ, *յուրակո-սամոյեդերեն*, *նենեցների* լեզուն: Գրի հիմքում 1931–37-ին՝ լատ., 1937-ից ռուս. այբուբենն է:

ՆԵՆԵՑՆԵՐ (ինքնանվանումը՝ խասովա), ժողդ ՌԴ-ում (Յամալա–Նենեց. ԻՄ, Տյումենի մարզ ևն): Ընդհ. թիվը՝ 41,3 հզ. (2002): Լեզուն՝ նենեց.: Հավատացյալներն ուղղափառ քրիստոնյա են, մի մասը պահպանում է ավանդ. հավատալիքները:

ՆԵՆԻՑԵՍԿՈՒ Կոստին (1902–1970), ռումին քիմիկոս-օրգանիկ: Ռումինիայի ԳԱ ակադ. (1955), ԽՍՀՄ ԳԱ արտ. (1966), ԳԴԵՀ ԳԱ թղթ., Գերմանիայի «Լեոպոլդինա» բնագետների ակադ-ի անդամ: Աշխ-ները վերաբերում են օրգ. ռեակցիաների կատալիզին, ալիցիկլիկ և տարացիկլիկ միացությունների, նավթի քիմիային, նավթաքիմ. սինթեզին:

ՆԵՆՉԵՆ ՏԱՆԳԼԱ, լ–շղթա Տիբեթի բարձրավանդակում՝ Չինաստանում: Երկ.՝ շուրջ 600 *կմ*, բարձր.՝ մինչև 7090 *մ*: Տարածված են բարձրլեռն. անապատները: Կան սառցադաշտեր:

ՆԵՆՑԿԻ (Nencki) Մարցելիուս Վիլհելմովիչ (1847–1901), ռուս. կենսաքիմիկոս (ծագումով՝ լեհ): 1891-ից՝ Ս. Պետերբուրգում: Առաջարկել է (Ի. Պ. Պավլովի հետ) կաթնասունների օրգանիզմում միզանյութի կենսասինթեզի սխեմա: Հաստատել է հեմի քիմ. կառուցվածքը և ցույց է տվել (1897–1901, լեհ գիտնական

Լ. Պ. Մարխլևսկու հետ) հեմոգլոբինի և քլորոֆիլի քիմ. ազգակցությունը:

ՆԵՇ (Nash) Ջոն Ֆորբս (1928–2015), ամերիկացի տնտեսագետ: 1950–60-ական թթ–ին մշակել է խաղերի տեսության մաթ. հիմունքները և հավասարակշռության տեսությունը, խաղերի տեսության ռազմավարությունը կիրառել է բազմաթիվ տնտ. իրավիճակներում:

Նորելյան մրց. (1994, Ռ. *Զելտենի* և Ջ. Չ. *Հարսանիի* հետ):

ՆԵՈ... (հուն.՝ neos – նոր), բարդ բառերի մաս. ցույց է տալիս երևույթի ձևափոխում, նոր մեկնաբանություն, զարգացման համեմատաբար բարձր աստիճան (օր.՝ ***նևոգեն***, ***նևոռեալիզմ*** ևն): Համապատասխանում է հայ. նոր..., նորա... մասնիկներին:

ՆԵՈԳԵՆ (< ***նևո***... և հուն.՝ ge – երկիր), ցամաքի կենդ. թագավորություն. զբաղեցնում է Հվ. և Կենտր. Ամերիկան, Վեստ Ինդիայի կղզիները: Թագավորության ժամանակակից ֆաունային բնորոշ են թերատամնավորները, օպոսումները, լայնքիթ կապիկները, ձեռնաթևավորները, թռչուններից՝ նանդուները, տինամուն, ամերիկ. անգղները, ձկներից՝ լեպիդոսիրենը և էլ. օձաձուկը:

ՆԵՈԳԵՆ, նեոգենի ժամանակաշրջան (***նևո***... և հուն.՝ genos – ծնունդ, հասակ), ***կայնոզոյի*** դարաշրջանի 2-րդ համակարգը: Տևողությունը՝ 22–23 մլն տարի: Ստորաբաժանվում է 2 մասի՝ միոցենի և պլիոցենի: Անվանումն առաջարկել է ավստրիացի երկրաբան Մ. Հյոռնեսը (1853): Ն–ում բուս. և կենդ. աշխարհներն սկսում են նմանվել ժամանակակից բուս. և կենդ. աշխարհներին: ՀՀ–ում միոցենի նստվածքներն ունեն սահմանափակ տարածում (Երևանյան գոգավորություն), որոնք ներկայացված են հզոր լճային (լագունային) առաջացումներով՝ կավերով, ավազաքարերով, գիպսի և քարաղի շերտերով ու ոսպնյակներով:

ՆԵՈԴԱՐՎԻՆԻԶՄ, Էվոլյուցիոն հայեցակարգ, առաջ է քաշել Ա. ***Վայսմանը*** 1880–90-ական թթ–ին. հիմնված է սաղմն. ընտրության մասին նրա վարկածի վրա: Քրոմոսոմներում տեղադրված ժառանգականության միավորների ընտրվածքը՝ դետերմինանտը, և նրանց անհավասար բաշխումը, որը, ըստ Վայսմանի, բխում է սեռ. բջջում նրանց միջև ընթացող պայքարից, հանգեցնում են կենս. նոր ձևերի առաջացման: Ն–ի հայեցակարգը՝ բեղմնավորման վերաբերյալ տվյալներն էվոլյուցիոն տեսության հետ կապելով, փորձել է լրացնել բնական ընտրության մասին դարվինյան պատկերացումները, հակադրվել է ***նևոլամարկիզմին*** և պարունակել է արգասավոր գաղափարներ (քրոմոսոմների դերը ժառանգականության մեջ, ձեռքբերովի հատկանիշների ժառանգման բացառումը), սակայն ամբողջության մեջ չի հաստատվել:

ՆԵՈԴԻՄ (Neodymium), Nd, տարրերի պարբեր. համակարգի III խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 60, ա. զ.՝ 144,24, լանթանոիդ է: Անվանումը՝ հուն. neos – նոր և didymos – կրկնակ, երկվորյակ բառերից, որովհետև ստացվել է նախկինում քիմ. տարր համարվող **դիդիմից** (Ն–ի և պրազեոդիմի խառնուրդ): Սաքուր Ն. սպիտակ, արծաթափայլ, փափուկ մետաղ է, խտ.՝ 6,908 *գ/սմ*^{3}, $t_{հալ.}$՝ 1016°C: Ինքնաթիռա– և հրթիռաշինության մեջ կիրառվող համաձուլվածքների բաղադրիչ է:

ՆԵՈԹՈՄԻԶՄ, կաթոլիկության առավել ազդեցիկ փիլ. դպրոցը: Սերել է ***Թոմմա Աքվինացու*** ուսմունքից: 1879–ին Լևոն XIII պապի կոնդակով Ն. հռչակվել է միակ ճշմարիտ և քրիստոնեության դոգմաներին համապատասխանող փիլ–յուն, ***թոմիզմի*** զարգացման նոր փուլը: Հետևորդներ ունի տարբեր երկրներում: Ներկայացուցիչներից են Է. Ժիլսոնը, Ժ. Մարիտենը, Մ. Գրաբմանը և ուր.: Գլխ. կենտրոնը Լուվենի համալսարանին (Բելգիա) առընթեր փիլ–յան բարձրագույն ինստ–ն է (հիմնադրել է Դ. Մերսիեն 1888–ին):

ՆԵՈԻՄՊՐԵՍԻՈՆԻԶՄ, հոսանք գեղանկարչության մեջ, առաջացել է մոտ 1885–ին Ֆրանսիայում: Ն–ի վարպետները (Ժ. Սյորա, Պ. Սինյակ), օգտագործելով գիտ. գունագիտ–յան եզրահանգումները, բարդ տոնները մաքուր գույների մեջ տարրալուծելու եղանակներին հաղորդել են իմպրեսիոնիզմին բնորոշ մեթոդ. կառնռնականություն:

ՆԵՈԼԱՄԱՐԿԻԶՄ, տարբեր ուղղությունների համախումբ էվոլյուցիոն ուսմունքում. առաջացել է XIX դ–ի 2–րդ կեսին՝ կապված ***լամարկիզմի*** առանձին դրույթների զարգացման հետ: Ն–ի կողմնակիցները փորձում էին լամարկիզմը հակադրել դարվինիզմին և ժխտել էվոլյուցիայի շարժիչ ուժը՝ բնական ընտրությունը:

ՆԵՈԿԱՄԻԶՄ, XIX դ–ի 2–րդ կեսի և XX դ–ի գեղ. հոսանքների ընդհ. անվանումը, որը հիմնված է անտիկ արվ–ի, Վերածննդի և կլասիցիզմի դաս. ավանդույթներին: Դաս. ավանդույթները հաճախ հակադրել են անհատապաշտության կամայականությանը (XX դ–ի ճարտ–ներ Օ. Պեռեն՝ Ֆրանսիայում, Պ. Բեռենսը՝ Գերմանիայում, Ի. Վ. Ժոլտովսկին, Ի. Ա. Ֆոմինը՝ Ռուսաստանում, քանդ–ներ Ա. Մայոլը՝ Ֆրանսիայում, Ա. Տ. Մատվեևը՝ Ռուսաստանում): Ն–ի հետ կապված «նոր նյութականության» (Գերմանիա), «մետաֆիզիկական գեղանկարչության» (Իտալիա) հոսանքներն արտահայտել են աշխարհի օտարումը մարդուց:

Գրկ–յան մեջ Ն–ին (XX դ–ի ֆրանսիացի բանաստեղծների՝ Շ. Մոռաս, Ժ. Մորեաս, «ռոմանական դպրոց») բնորոշ է անտիկ և դաս. ողբերգության ու քնարերգության կողմնորոշումը՝ ընդգծված վեհանձնությամբ, խիստ ոճով և պարզությամբ (հակադրված դեկադանսին և ռեալիզմին):

Ն. երաժշտության մեջ թեև ամբողջ. ուղղություն չէր, սակայն արձագանքել է XIX դ–ի վերջին և XX դ–ի սկզբին երաժշտ. լեզվի և ձևերի բարդացմանը: Այն դրսևորվել է Ֆ. Բուզոնիի, Պ. Հինդեմիթի, Ա. Կազելլայի, Ի. Ֆ. Ստրավինսկու ստեղծագործություններում:

ՆԵՈՆ (Neonum), Ne, տարրերի պարբեր. համակարգի VIII խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 10, ա. զ.՝ 20,179, իներտ գազ է: Անվանումը՝ հուն. neos – նոր բառից: Սովոր. պայմաններում Ն. անգույն, անհոտ գազ է (խտ.՝ 0,900 *գ/սմ*^{3}, $t_{եռ.}$՝ 246,08°C): Էլ. պարպումով գրգռելիս արձակում է նարնջակարմիր լույս: Ն. օգտագործում են շիկացման, գազալուս. և ազդանշան., իսկ 40 % Ն. պարունակող ազոտի և հելիումի խառնուրդը՝ գովազդ. լամպերը լցնելու համար: Օդանավակայանների և նվինգստ–ների փարոսներում օգտագործում են նեոն. աղեղ. լամպեր:

ՆԵՈՆԱՅԻՆ ԼԱՄՊ, լույսի պարպում. լամպ, որի մեջ օպտիկ. ճառագայթումն առաջանում է նեոնահելիում. խառնուրդում էլ. պարպման (մասնավորապես՝ մարմրող լիցքի) դեպքում: Ունի նարնջակարմիր լուսարձակում: Լուսատացքը՝ սկսած 25 *լմ/Վտ*–ից: Օգտագործում են ազդանշան. և լուսավորման սարքերում:

ՆԵՈՆՆԵՐ (Paracheirodon), ծածանակերպների կարգի ձկների ցեղերի խումբ: Էգերի երկ.՝ 4,5 *սմ*, արուներն ավելի մանր են: Մարմնի երկայնքով ունի երկնագույն լուսարձակող շերտ: Ապրում են Ամազոնի վտակներում: Աքվարիումային ձկներ են:

ՆԵՈՊՈՋԻՏԻՎԻԶՄ, վերլուծ. փիլ–յան հոսանք: Սկզբնավորել են Վիեննական խմբակի անդամները (Մ. Շլիկ, Ռ. Կառնապ, Հ. Ֆեյգլ, Ֆ. Ֆրանկ, Օ. Նոյրաթ ևն) 1920–ական թթ–ին: Հերքելով փիլ–յան՝ որպես աշխարհայացք. խնդիրների տես. իմացության հնարավորությունը՝ Ն. գիտ–յունը հակադրել է փիլ–յանը: Ն–ի խնդիրը գիտ–յան տրամաբ. կամ լեզվաբ. վերլուծության մեթոդի մշակումն է (այստեղից՝ «տրամաբանական պոզիտիվիզմը»): 1950–ական թթ–ին մեծ կշիռ է ձեռք բերել լեզվաբ. փիլ–յունը: Ն–ի ներկայացուցիչները նպաստել են ժամանակակից ձևական տրամաբ–յան, նշանագիտ–յան (սեմիոտիկա) և գիտ–յան տրամաբ–յան զարգացմանը:

ՆԵՈՌԵԱԼԻԶՄ, 1. XX դ–ի փիլ–յան ուղղություն: Հիմն. գաղափարներն արտահայտել են Ջ. Մուրը, Բ. Ռասելլը և ուր., հատուկ գիտակարգ է զարգացել ԱՄՆ–ում (Ռ. Պերի, Ու. Մոնտեգյու, Է. Հոլթ, Է. Սպոլդինգ, Ու. Մարվին, Ու. Պիտկին): Ն. առաջադրել է գիտակցության մեջ ճանաչվող առարկայի անմիջական «տրվածության» դրույթը, որը հանգեցնում է մտածողության մեջ արտաքին աշխարհի տարրալուծմանը: 1930–ական թթ–ին Ն–ին փոխարինել է քննադատ. ռեալիզմը:

2. Ուղղություն իտալ. կինոյում և գրկ–յան մեջ 1940–ական թթ–ի կես–50–ական թթ–ի կեսին: Ֆիլմերը նկարահանվել են հիմնականում վավերագր. փաստերի հիման վրա՝ բնության մեջ՝ ներգրավելով ոչ պրոֆեսիոնալ դերակատարների (առաջինը՝ «Հռոմը՝ բաց քաղաք», 1945, ռեժ.՝ Ռ. Ռոսելինի): Նշանավոր վարպետներից են Լ. Վիսկոնտին, Վ. դե Սիկան, Ջ. դե Սանտիսը, Պ. Ջերմին, Չ. Զավատինին և ուր.: Գրկ–յան մեջ հայտնի են Վ. Պրատոլինին, Է. դե Ֆիլիպոն, Կ. Լևին և ուր.: Ն. մեծ ազդեցություն է ունեցել Իտալիայի և այլ երկրների կինեմատոգրաֆիայի զարգացման վրա:

ՆԵՈՌՈՄԱՆՏԻԶՄ, տարատեսակ հոսանքների պայման. անվանումը եվրոպ. գեղ. մշակույթում XIX–XX դդ–ի սահմանագծին. ծագել է հիմնականում որպես հակազդեցություն պոզիտիվիզմին՝ գաղափարախոսության մեջ, նատուրալիզմին՝ արվ–ում, վերածնել ռոմանտիզմի մի շարք սկզբունքներ (անձն. կամքի պաթոսը, առօրեականի ժխտումը, իռացիոնալի պաշտամունքը, ֆանտաստիկային ձգտելը ևն): Ն. ընդգրկում է ֆրանս. սիմվոլիզմը, ուշ իմպրեսիոնիզմը, անգլ. գրկ–յան մեջ՝ նույն ժամանակների առավել խիստ հոսանքները (Ջ. Կոնրադ, Ռ. Քիպլինգ): Հայ գրկ–յան մեջ Ն–ի արտահայտությունները տարբեր ձևերով երևան են եկել Ա.

Իսահակյանի, Դ. Վարուժանի, Սիամանթոյի, Վ. Տերյանի պոեզիայում, Լ. Շանթի դրամատուրգիայում և արձակում, Վ. Փափազյանի ստեղծագործություններում:

Երաժշտության մեջ «Ն.» ասելիս սովորաբար հասկանում են ուշ ռոմանտիզմի (Ֆ. Լիստ, Ռ. Վագներ), նաև 1970–80-ական թթ-ի կոմպոզիտորների ստեղծագործությունները, որտեղ անդրադարձել են ռոմանտիզմի ոճին:

ՆԵՈՍԽՈԼԱՍՏԻԿԱ, կաթոլիկ. փիլ-յան հոսանքների հավաք. անվանումը: Ձևավորվել է XIX դ-ի սկզբին Իտալիայում, Իսպանիայում, լայնորեն տարածվել հատկապես *նեոթոմիզմի* հոչակումից հետո: Իսպանիայում (XX դ-ի 2-րդ կեսին, նաև Գերմանիայում) զարգացել է սուարեսականությունը (Ֆրանսիսկո Սուարեսի փիլ-յունը): Մի շարք դպրոցներ փորձել են *թոմիզմը* համադրել նորագույն փիլ. հոսանքների հետ:

ՆԵՈՏԵԿՏՈՆԻԿԱ, նորագույն տեկտոնիկա, երկրատեկտոնիկայի բաժին. ուսումնասիրում է երկրակեղևի նորագույն ձևախախտումներն ու տեղաշարժերը: Նեոտեկտ. շարժընթացների անմիջական կամ ածանցյալ դրսևորումներ են երկրաշարժերը, հրաբուխները, քարոլորտի բլոկների տեղաշարժերը, հանքայնացման որոշ երևույթներ:

ՆԵՈՖՐԵՅԴԻԶՄ, ուղղություն ժամանակակից փիլ-յան և հոգեբ-յան մեջ, տարածվել է գլխավորապես ԱՄՆ-ում: 1930-ական թթ-ի վերջերին Ն. առանձնացել է ուղղափառ *ֆրեյդիզմից* (Կ. Հոռնի, Հ. Սալիվան, Է. Ֆրոմ և ուր.), ձևավորվել հոգեվերլուծության և ամերիկ. սոցիոլոգ. ու ազգաբան. ուսմունքների միավորմամբ: Ն-ի ելակետը այսպես կոչված սոցիալ. (Է. Ֆրոմ) կամ մշակութ. (Ա. Կարդիներ) պատճառականության սկզբունքն է, չի ընդունում լիբիդոն և սուբլիմացիան: Հոգեկան նորմերը մեկնաբանվում են որպես անհատի հարմարվողականություն սոցիալ. միջավայրին, իսկ «սոցիալական նույնականության ամեն մի խախտում դիտվում է որպես ախտաբանություն:

ՆԵՉՈՒՅ-ԼԵՎԻՑԿԻ (Լևիցկի) Իվան Սեմյոնովիչ (1838–1918), ուկրաինացի գրող: Հեղինակ է սոցիալ. սուր թեմաներով «Բուռլակուհին» (1876), «Միկոլա Ջերյա» (1878), «Քայդաշի ընտանիքը» (1879, ընտանեկան-կենցաղ., երգիծ.), «Խարդախ Աթոնացին» (1890) վիպակների, «Մարուսյա Բոգուսլավկան» (1875) և այլ պիեսների, նաև պատմավեպերի:

ՆԵՊԱԼ, **Նեպալի Դաշնային ժողովրդավարական Հանրապետություն**, պետություն Հվ. Ասիայում: Սահմանակից է Չինաստանին, Հնդկաստանին: Տարածքը՝ 141 հզ. *կմ*^{2}, բն.՝ 30 մլն (2013): Մայրաքաղաքը՝ *Կատմանդու*: Պետ. լեզուն՝ նեպալ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Բաժանված է 14 վարչ. գոտիների: Հավատացյալների մեծ մասը հինդուական է: Անդամակցում է ՄԱԿ-ին, ԱոտՀԿ-ին ևն: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 1,1 հզ. ԱՄՆ դոլար է (2008): Արտահանում է գորգեր, ջուտ, հագուստ, կաշվե իրեր ևն, ներմուծում է մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ, սննդամթերք, ոսկի ևն: Դրամ. միավորը՝ նեպալյան ռուփի:

I դ-ում Ն-ի կամ Կատմանդուի հովտում առաջացել է նեվարների վաղ ավատ. պետությունը (հնդ. աղբյուրներում՝ Ն., կազմալուծվել է VIII դ-ում), որը մեծ չափով կրել է հնդ. քաղաքակրթության (կրոն, իրավունք, պետ. լեզու) ազդեցությունը: Միջնադարում Ն-ի տարածքում գոյություն են ունեցել մանր իշխանություններ, որոնք XVIII դ-ում միավորվել են մեկ թագավորության մեջ՝ Կատմանդու մայրաքաղաքով: XVIII դ-ի 2-րդ կեսից Ն-ի պատմության մեջ զգալի դեր է խաղացել անգլ. Արլ-հնդ. ընկ-ը: 1814–16-ի անգլո-նեպալ. պատերազմի հետևանքով Ն-ին պարտադրվել է պայմանագիր, որով այն որոշ տարածքներ է զիջել, և անգլ. հսկողության տակ են դրվել Ն-ի արտաքին հարաբերությունները: 1846-ին Արլ-հնդ. ընկ-յան աջակցությամբ փաստացի իշխանությունն անցել է Ռանա ավատ. տոհմին (Ջանգ Բահադուրը պետ. հեղաշրջմամբ դարձել է վարչապետ), իսկ թագավորը դարձել է անվան. ղեկ.: Ն-ում սկսած ազատագր. պայքարը հարկադրել է Մեծ Բրիտանիային 1923-ի պայմանագրով ճանաչել Ն-ի անկախությունը: 1959-ից պետության կառավարումն անցել է թագավորին: 1990-ի սահմանադրությամբ երաշխավորվել է բազմակուս. կառավարումը: 1996-ից երկրում սկսվել է մաոիստ. ապստամբություն, որն ավարտվել է 2006-ին: 2007-ին ընդունվել է ժամանակավոր սահմանադրություն, որով թագավորը զրկվել է պետության ղեկ-ի կարգավիճակից: 2008-ին հռչակվել է որպես դաշն. ժողովրդավար. հանրապետություն:

ՆԵՊԱԼԵՐԵՆ, նեպալի, *նեպալցիների* լեզուն, Նեպալի պետ. լեզուն: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի հնդիրան. ճյուղի հնդ. ենթաճյուղին: Օգտագործում է *դևանագարին*:

ՆԵՊԱԼՑԻՆԵՐ (կհաներ, ինքնանվանումը՝ նեպալիներ), հնդարիական ժողդ, Նեպալի խոշորագույն ազգագր. խումբը (6,5 մլն, 2001): Ապրում են նաև Հնդկաստանում 2,9 մլն (2001): Լեզուն՝ նեպալ.: Հավատացյալները հինդուական են:

ՆԵՊԵՐ, **Նեյպիր** (Napier), Ջոն (1550–1617), շոտլանդացի մաթեմատիկոս, հայտնագործել է լոգարիթմները: Ն-ի անունով՝ նեպեր (*նպ*) է կոչվել լոգարիթմ. հարաբեր. մեծության միավորը (2 նույնանուն ֆիզ. մեծությունների հարաբերության բնական լոգարիթմը): 1 *նպ* = ln(F_2/F_1), երբ $F_2/F_1 = e \approx 2{,}718$, որտեղ F_2-ը և F_1-ը ֆիզ. մեծության (լարվածություն, հոսանքի ուժ ևն) արժեքներն են: Էլեկտրատեխնիկայում 1 *նպ* = 0, 8686 *բել* = 8,686 *դԲ*:

ՆԵՊԵՐՅԱՆ ԹԻՎ, e թիվը, այն սահմանը, որին ձգտում է $(1+1/n)^n$ արտահայտությունը՝ n-ի անվերջ աճի դեպքում. e = 2,718281828459045 … *բնական լոգարիթմների* հիմքը: Կոչվել է Ջ. *Նեպերի* անունով:

ՆԵՊՈՐԵԺՆԻՄԻ Սերգեյ Պավլովիչ (1921–2014), կիրառ. մեխանիկայի և հրթիռ. տեխնիկայի բնագավառի ռուս գիտնական: ՌԳԱ թղթ. անդամ (1984): Սոց. աշխ. հերոս (1971): Ն-ի ղեկավարությամբ մշակվել և ռուս. բանակի սպառազինության մեջ են ներառվել տարբեր նշանակության հրթիռ. համալիրներ. օր.՝ «Շտուրմ – Ս», որն աշխարհում առաջին անգամ հանդերձված էր զերձայն. հրթիռով:

Լենինյան (1964), ԽՍՀՄ Պետ. (1969, 1976, 1981) մրց-ներ:

ՆԵՊՏՈՒՆ, աղբյուրների ու գետերի, հետագայում՝ ծովերի աստվածը հռոմ. դից-յան մեջ: Նույնացվել է հուն. *Պոսեյդոնի* հետ:

ՆԵՊՏՈՒՆ (աստղագիտ. նշանը՝ ♆), Արեգակն. համակարգի 8-րդ, Արեգակից ամենահեռու մոլորակը: Միջին հեռ. Արեգակից՝ 30,1 *ա. մ.* (4503 մլն *կմ*): Արեգակի շուրջը պտտման պարբերությունը (տարվա տևողությունը)՝ 164, 8 երկր. տարի, իր առանցքի շուրջը պտտման պարբերությունը (օրվա տևողությունը)՝ 16,1 երկր. *ժ*: Հասարակածի տրամագիծը՝ 49500 *կմ*, զանգվածը՝ 1,04 ·10^{26} *կգ*: Մթն-ի կազմը՝ H_2, He, CH_4: Ջերմաստիճանը՝ –213°C: Հայտնաբերված է Ն-ի մագնիս. դաշտը, 13 արբանյակ (2010) և օղակների համակարգ: Ն. հայտնաբերել է Ի. *Հալլեն* 1846-ին՝ Ու. Ժ. *Լևերիեի* և Ջ. Կ. *Ադամսի* հաշվարկների հիման վրա:

ՆԵՊՏՈՒՆԻԶՄ, XVIII դ-ի վերջ–XIX դ-ի սկզբին տարածված երկրբ. հայեցակարգ՝ ջրում նստվածք տալու միջոցով ապարների (այդ թվում՝ հրային) ծագման մասին: Երևան է եկել երկրբ-յան՝ որպես գիտ-յան ձևավորվելու ընթացքում, երբ այն տակավին եղել է կրոնի և «համաշխարհային ջրհեղեղի» մասին պատկերացումների ազդեցության ներքո: Ն-ի հիմնադիրը Ա. Գ. *Վեռներն* է:

ՆԵՊՏՈՒՆԻՈՒՄ (Neptunium), Np, տարրերի պարբեր. համակարգի III խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 93, ա. զ.՝ 237,0482, ակտինոիդ է: Անվանվել է *Նեպտուն* մոլորակի անունով: Ճառագայթաակտիվ է, ամենակայուն իզոտոպը ^{237}Np է (կիսաքայքայման պարբերությունը՝ 2,14 · 10^6 տարի): Ն. սպիտակ, արծաթափայլ, կարծր մետաղ է, խտ.՝ 20,45 *գ/սմ*^{3}, $t_{հալ.}$՝ 639°C: Ստացվել է արհեստականորեն (բնության մեջ հայտնաբերվել է չնչին քանակությամբ):

ՆԵՊՈՒԿՆԵՐ, **պապուկներ**, հավասարոտների կարգի, առավելապես՝ ցամաք. խեցգետնակերպների ենթակարգ: Երկ.՝ 1–50 *մմ*: Հայտնի է մոտ 1000 տեսակ: Ապրում են տաք ու խոնավ տեղերում: Երբեմն վնասում են ջերմոց. մշակաբույսերը, անտառներում օգտակար են:

ՆԵՋԱՏԻԳԻԼ, Բեհչեթ (1916–1979), թուրք բանաստեղծ, գրականագետ: Հեղինակ է քաղաքաց. և փիլ. թեմաներով քնար. ժողների: Կազմել է «Մեր գրական անունների բառարան»-ը (7-րդ հրտ.՝ 1972), «Մեր գրական գործերի բառարան»-ը (1971):

ՆԵՋԵՖ (Էն Նեջեֆ), ք. Իրաքում՝ Եփրատի հովտում, համանուն մուհաֆազի վարչ. կենտրոնը: Բն.՝ 560 հզ. (2008): Տրանսպորտ. առևտ. կենտրոն է Մեքքա և Մեդինա (Սաուդյան Արաբիա) ք-ների ճանապարհին: Հիմնադրվել է VIII դ-ում: Շիա մահմեդականների սրբավայր քաղաքներից է:

ՆԵՈ-, տես *Հակաքրիստոս*:

ՆԵՌՆՍՏ (Nernst) Վալտեր (1864–1941), գերմանացի ֆիզքիմիկոս, արդի ֆիզքիմիայի հիմնադիրներից: ԽՍՀՄ ԳԱ արտ. պատվ. անդամ (1926): Ձևակերպել է (1906) թերմոդինամիկայի 3-րդ սկզբունքը (Ն-ի թեորեմ), հայտնաբերել (1886) ջերմամագնիս. երևույթներից մեկը (*Նեռնստ-Էտինգսհաուզենի երևույթ*): Աշխ-ները վերաբերում են լուծույթների տեսությանը (Ն-ի բաշխման օրենք), էլեկտրաքիմիային, կինետիկային և կատալիզին: Մշակել է (1904) հետերոգեն քիմ. ռեակցիաների դիֆուզային տեսություն:

Նոբելյան մրց. (1920):

ՆԵՒՆՍՏԻՆԳՀԱՈՒԶԵՆԻ ԵՐԵՎՈՒՅԹ, մագնիս. դաշտի ազդեցությամբ էլ. դաշտի առաջացումն այն հաղորդիչներում (մագնիսականին ուղղահայաց ուղղությամբ), որոնցում կա ջերմաստիճանի գրադիենտ: 1886-ին հայտնաբերել են Վ. *Նեռնստը* և Ա. Էտինգսհաուզենը (1796–1887):

ՆԵՄՄԵԼՈՎ Վիկտոր Իվանովիչ (1863–1937), ռուս ուղղափառ աստվածաբան և փիլ.: Կազանի հոգևոր ակադ-ի փաստացի ռեկտորը՝ վերջինիս կիսալեգալ գործունեության ընթացքում (1920–23): Հեղինակ է «Դիտություն մարդու մասին» (հ. 1, 2, 1898, 1903), «Գրիգոր Նյուսացու դոգմատիկ համակարգը» (հ. 1–2, 1887–88) աշխ-ների:

ՆԵՄՄԵՅԱՆՈՎ Ալեքսանդր Նիկոլաևիչ (1899–1980), ռուս քիմիկոս-օրգանիկ, տարրօրգ. միացությունների քիմիայի գիտ. դպրոցի հիմնադիր: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1943, թղթ. անդամ՝ 1939-ից) և նախագահ (1951–61): Սոց. աշխ. հերոս (1969, 1979): ԽՍՀՄ ԳԱ տարրօրգ. միացությունների ինստ-ի (այժմ՝ Ն-ի անվ.) տնօրեն (1954–80): Աշխ-ները վերաբերում են մետաղօրգ. միացությունների քիմիային: Առաջարկել է արոմատիկ շարքի մետաղօրգ. միացությունների սինթեզի դիազոեղանակ (Ն-ի ռեակցիա, 1929): Ուսումնասիրել է օրգ. ռեակցիաների մեխանիզմը, «սենդվիչային» միացությունները, տելոմերումը:

ԽՍՀՄ Պետ. (1943), Լենինյան (1966) մրց-ներ, ԳԱ Մ. Վ. Լոմոնոսովի անվ. ոսկե մեդալ (1962):

ՆԵՄՄԻԹ (Nasmyth) Ջեյմս (1808–1890), անգլիացի գյուտարար և արդյունաբեր.: Ստեղծել է շոգեմուրճը (1839, արտոնագիր՝ 1842), մի շարք մետաղամշակման հաստոցներ: Հիմնադրել է խոշոր մեքենաշին. ձեռն. (1834):

ՆԵՍՏԵՐԵՆԿՈ Եվգենի Եվգենիևիչ (ծ. 1938), ուկրաինացի երգիչ (բաս): ԽՍՀՄ ժող. արտիստ (1976): Սոց. աշխ. հերոս (1988): 1963-ից՝ Լենինգրադի օպեր., 1971-ից՝ Մոսկվայի Մեծ թատրոնների մեներգիչ:

Մեներգիչների Պ. Ի. Չայկովսկու անվ. միջազգ. մրցույթի 1-ին (1970, Մոսկվա), Լենինյան (1982) մրց-ներ:

ՆԵՍՏԵՐՈՎ Իվան Իվանովիչ (1932–2010), ռուս երկրաբան: ՌԳԱ թղթ. անդամ (1976): ՌԴ վաստ. երկրաբան:Աշխ-ները վերաբերում են նավթի և գազի երկրբանը: Ուկրաինայի նավթագազ. հանքավայրի հայտնաբերողներից:

Լենինյան (1970), ՌԴ Կառ-յան (1996) և մի շարք այլ մրց-ներ:

ՆԵՍՏԵՐՈՎ Միխայիլ Վասիլևիչ (1862–1942), ռուս գեղանկարիչ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1942): Ստեղծել է կրոն. բանաստեղծ. կերպարներ («Պատանի Բարդուղիմեոսի տեսիլը», 1889–90, «Ռուսիայում», 1916), բնութագր. դիմանկարներ («Ի. Պ. Պավլով», 1935, «Վ. Ի. Մուխինա», 1940): Ն-ի «Երեք կրոնավոր» (1915), «Որդու դիմանկարը՝ իսպանական գլխարկով» (1936) և այլ գործեր ՀԱՊ-ում են: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941):

ՆԵՍՏԵՐՈՎ Պյոտր Նիկոլաևիչ (1887–1914), ռուս ռազմ. օդաչու, շտաբս-կապիտան, բարձրագույն պիլոտաժի հիմնադիրը: Կատարել է բարձրագույն պիլոտաժի մի շարք թռիչքաձևեր. առաջինն է իրականացրել կողաթեքվածք, թեքադարձ, նաև «մահվան օղակը» (Նեստերովի օղակ, 27.08.1913-ին): Զոհվել է օդ. մարտում:

ՆԵՍՏՈՐ, Պիլոսի արքան հոմ. դից-յան մեջ, *Տրոյական պատերազմի* մասնակիցներից: «Իլիականում» պատկերվել է իմաստուն և կենսափորձով հարուստ ծերունու կերպարանքով:

ՆԵՍՏՈՐ, ասորի հոգևորական: *Նեստորականության* հիմնադիրը: V դ–ի 1-ին քառորդին եղել է Անտիոքի (Ասորիք) վրդ., 428–431-ին՝ Կ. Պոլսի պատրիարք: Եփեսոսի 3-րդ տիեզ. ժողովում (431) մեղադրվելով հերձվածության մեջ՝ 433-ին աքսորվել է Եգիպտոս, որտեղ և մահացել է:

ՆԵՍՏՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, քրիստոսաբան. ուսմունք. առաջացել է V դ–ում: Ըստ Ն-յան՝ Հիսուս Քրիստոսի մեջ միաձուլված է նրա երկու՝ աստված. և մարդկային բնությունը: Հիմնադիրը Կ. Պոլսի արք. *Նեստորն* է (428–431), որը հիմնվում էր անտիոքյան դպրոցի աստվածաբանների (Թեոդորոս Մոփսուեստացի և ուր.) գաղափարների վրա: Ն. ճանաչում է Քրիստոսի մեջ երկու բնություն և երկու էություն: Քրիստոսի՝ Մարիամից ծնվելը, չարչարվելը, խաչի վրա մահը Ն. վերագրում է նրա մարդկային, իսկ հրաշքներ գործելը, գերբնական գործողությունները՝ նրա աստված. էությանը: Քանի որ ըստ Ն-յան՝ Մարիամից ծնունդը վերաբերվում է միայն Քրիստոսի մարդկային, բայց ոչ նրա աստված. էությանը, ուստի Մարիամի «Աստվածածին» լինելը մերժվում է: Ն. համարվել է հերետիկոսություն III–V տիեզ. ժողովներում (431, 451, 553): Հռոմ. կայսրությունում արգելված Ն. լայնորեն տարածվել է Միջագետքում, Պարսկաստանում, ավելի ուշ՝ Կենտր. Ասիայում, Չինաստանում, Հնդկաստանում: Ն. Արևելքի ասոր. եկեղեցու դավանաբանության հիմքն է:

ՆԵՍՏՈՐՆԵՐ (Nestor), թութականմանների կարգի թռչունների սեռ: Հայտնի է 2 տեսակ (կեա և կակա)՝ Նոր Զելանդիայում: Կեան (երկ.՝ մոտ 50 *սմ*) հարմարվել է կենդ. կերով (այդ թվում՝ լեշերով) սնվելուն և սկսել է հարձակվել ոչխարների վրա՝ կտցելով նրանց ենթամաշկ. ճարպը: Գրեթե ոչնչացվել է. պահպանվում է:

ՆԵՎ (Nève) Ֆելիքս Ժան-Բատիստ Ժոզեֆ (1816–1893), բելգիացի արևելագետ, հայագետ: Փիլ. գիտ. դ–ր (1838): Հայկ. և հնդ. մատենագրության ու սանսկրիտի մասնագետ: Բելգիայի արքուն., Պետերբուրգի կայսեր., Հռոմի կաթոլիկ. ակադ-ների և ՄՄ պատվ. անդամ: Հեղինակ է հայագիտ. հոդվածների («Պատմական ակնարկ հայոց լեզվի և գրականության», 1841, ևն), աշխ-ների («Քրիստոնյա Հայաստանը և յուր գրականությունը», 1886, ևն): Ֆրանս. է թարգմանել Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Եղիշեի, Թովմա Մեծոփեցու և ուր. գործերից: 1855-ին Փարիզի արքուն. մտնդ-ի 2 ձեռագրի հիման վրա հրատարակել է «Ուսումնասիրություն Թովմա Մեծոփեցու անձի և նրա XV դարի Հայաստանի պատմության շուրջ» երկը: Ն-ի հայագիտ. ուսումնասիրություններն ամփոփված են «Քրիստոնյա Հայաստանը և յուր գրականությունը» (1886) ժող–ում:

ՆԵՎԱ, գետ ՌԴ եվրոպ. մասի հս–արմ–ում: Երկ՝. 74 *կմ*, ավազանը՝ 281 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 2530 *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Լադոգա լճից և թափվում է Բալթիկ ծովի Ֆինն. ծոց: Մտորին հոսանքում լինում են ջրհեղեղներ, երբեմն՝ աղետալի: Ն–ի 42 կղզիների վրա է կառուցված Ս. Պետերբուրգ ք–ը:

ՆԵՎԱԴԱ (Nevada), նահց ԱՄՆ–ի արմ–ում: Տարածքը՝ 286,3 հզ. *կմ*^{2}, բն.՝ 2,7 մլն (2011): Վարչ. կենտրոնը՝ *Քարսոն Միթի*:

ՆԵՎԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1240, տեղի է ունեցել ռուս. և շվեդ. զորքերի միջև Նևա գետի վրա: Ավարտվել է Նովգորոդի իշխան Ալեքսանդր Յարոսլավիչի հաղթանակով, որի համար նրան տվել են Նևսկի պատվանունը:

ՆԵՎԱՆԼԻՆԱ (Nevanlinna) Ռոլֆ Հերման (1895–1980), ֆինն մաթեմատիկոս: Աշխ-ները վերաբերում են անալիտիկ ֆունկցիաներին: Մաթ–ի միջազգ. խորհրդաժողովը 1981-ին սահմանել է Ն–ի մրց.՝ ՏՏ ոլորտի երիտասարդ մաթեմատիկոսների համար:

ՆԵՎԱՐԻ, չին-տիբեթ. լեզվաընտանիքի տիբեթ. ճյուղի լեզու: Օգտագործում է *դևանգարին* կամ բենգալ. հնագույն գրի հիմքով սեփ. այբուբենը:

ՆԵՎԵԼՍԿՈՅ Գենադի Իվանովիչ (1813–1876), Հեռավոր Արևելքի ռուս հետազոտող, ծովակալ (1874): 1848–49 և 1850–55-ին ուսումնասիրել է Սախալինը (հաստատել է կղզի լինելը), Ամուր գետի ստորին հոսանքը, Թաթար. նեղուցը: Հիմնադրել է Նիկոլայևան հենակետը (1850, այժմ՝ Ամուրի Նիկոլայևսկ): Ն-ի անունով են կոչվել ծոց ու նեղուց:

ՆԵՎԵՆԻԼԻ (Newerly) Իգոր (Աբրամով, 1903–1987), լեհ գրող: Հեղինակ է «Երիտասարդը Սալսկի տափաստաններից» (1947), «Վերադարձած մարդկանց կղզեխումբը» (1950), «Կենդանի կապեր» (1966) և այլ վիպակների, «Փոյուգիական աստղի տակ» (1952), «Անտառի ծով» (1960), «Կապույտ երազի բլուրը» (1986) և այլ վեպերի: ԼԺՀ Պետ. մրց. (1950, 1952):

ՆԵՎԻՈՒՍ (Naevius) Գնեուս (մ. թ. ա. մոտ 270–201), հռոմեացի դրամատուրգ, բանաստեղծ: Հեղինակ է կատակերգությունների, ողբերգությունների, «Պունիական պատերազմ» էպիկ. պոեմի, որը մեծ ազդեցություն է ունեցել հոմ. գրկ–յան վրա:

ՆԵՎԻՏՏ, տես *Նյարդաբորբ*:

ՆԵՎՐՈԶՆԵՐ, ֆունկցիոնալ, այսպես կոչված, սահման. հոգեկան հիվանդությունների խումբ (նյարդաթուլություն, հիսթերիա, պսիխոպաթիա), որոնք զարգանում են հոգեկանը վնասող գործոնների, հուզ. կամ մտավոր ծանրաբեռնվածությունների, հազվադեպ՝ վարակիչ և այլ հիվանդությունների ազդեցությամբ:

ՆԵՎՐՈՊԱԹԻԱ, նյարդ. համակարգի զարգացման առանձնահատկություն, որը բնորոշվում է նևրոտիկ ռեակցիաների հանդեպ երեխայի հակվածությամբ:

ՆԵՏ (լատ.՝ Sagitta), ոչ մեծ համաստեղություն երկնքի Հս. կիսագնդում՝ Աղվես, Հերկուլես, Արծիվ և Դելֆին համաստեղությունների միջև: Պարունակում է աչքով տեսանելի 28 աստղ: α-ն կրկնակի աստղ է:

ՆԵՏ ՈՒ ԱՂԵՂ, հնագույն հեռահար զենք. օգտագործել են աշխարհի գրեթե բոլոր ժողդ-ները միջին քարի դարից մինչև XVII դ., որոշ ժողդ-ներ՝ մինչև XX դ.: Նետաձգությունը հայտնի է նաև որպես հնագույն մարզաձև:

ՆԵՏԱՉԳՈՒԹՅՈՒՆ, *հրաձգային սպորտի* տեսակ. 80–122 *սմ* տրամագծով շրջանաձև թիրախների խոցման մրցումներ՝ 36 նետերով, 4 հեռ–ից (60–90 *մ*): Որպես մարզաձև՝ կազմավորվել է XIX դ–ի վեր-

ջին: Ն–յան միջազգ. ֆեդերացիան (FIIA, հիմն.՝ 1931) միավորում է 144 երկիր (2010): Օլիմպ. խաղերում ընդգրկվել է 1900–08–ին, 1920–ին և 1972–ից, աշխարհի առաջնությունն անցկացվում է 1931–ից, Եվրոպայինը՝ 1968–ից: Հայաստանի Ն–յան ֆեդերացիան ստեղծվել է 1969–ին:

ՆԵՏԱՐՄԱՏ (Maranta), կոճապղպեղազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 25 տեսակ՝ Ամերիկայի արևադարձներում: Եղեգնային Ն–ի ընդերացողունից ստանում են ***առորուտ***: Խայտերանգ տերևներով տեսակներն աճեցնում են որպես զեղազարդիչ:

ՆԵՏԱՕՁԵՐ (Psammophis lineolatus), ***իժերի*** ընտանիքի սողուն: Մարմինը բարակ է, երկ.՝ մինչև 120 *սմ*: Մեջքի վրայով ձգվում են 4 մուգ շերտեր: Տարածված է Կենտր. և Առաջավոր Ասիայում: Այսրկովկասում հազվադեպ է: Շատ արագաշարժ է (այստեղից՝ անվանումը): Խայթոցը վտանգավոր չէ:

ՆԵՏՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐ, հին ու միջին դարերում թշնամու կենդանի ուժը ոչնչացնող և պաշտպ. կառույցներն ավերող ռազմ. մեքենաներ: Հիմնված էր ոլորված ու ձգված թելքերի (ջլեր, մազեր ևն) էներգիայի օգտագործման վրա: Ն. մ. հայտնի էին դեռ Հին Արևելքում (Ասորեստան, Հնդկաստան ևն), Հին Հունաստանում, հատկապես՝ Հին Հռոմում: Այդ մեքենաները բաժանվում էին ***կատապուլտների, բալիստների*** ևն:

ՆԵՏՏՈ Իգոր Ալեքսանդրովիչ (1930–1999), ռուս. ֆուտբոլիստ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1954): «Սպարտակ» թիմի կիսապաշտպան (Մոսկվա, 1948–66): Օլիմպ. խաղերի (1956), Եվրոպայի (1960), ԽՍՀՄ (1952, 1953, 1956, 1958, 1962) չեմպիոն:

ՆԵՏՏՈ (իտալ.՝ netto – բառացի՝ զուտ), 1. ապրանքի զուտ քաշը՝ առանց փաթեթավորման (տարայի), ***բրուտոյի*** հակառակը: 2. Ապրանքի արժեքը՝ զեղչերը հանելուց հետո: 3. Զուտ շահույթը՝ այն ստանալու համար կատարած բոլոր ծախսերը հանելուց հետո:

ՆԵՐԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ, ամուսնության սովորույթ որոշակի հաս. խմբի (տոհմ, ցեղ, կաստա ևն) ներսում: Նախնադար. հաս–յան մեջ տոհմը եղել է արտաամուսնական, ցեղը՝ ներամուսնական: Հայաստանում Ն. գոյություն է ունեցել նախաքրիստ. շրջանում: Քրիստոնեության տարածումից հետո եկեղեց. կանոններով (Աշտիշատի ժողով ևն) արյունակցությամբ կապված անձանց միջև ամուսնությունն արգելվել է:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, հանրակրթության տեսակ, որը հնարավորություն է տալիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը (ծնողների ընտրությամբ) կազմակերպել տարեկիցների հետ համատեղ՝ հանրակրթ. դասարաններում՝ անհատ. ուս. պլանով կամ հատուկ ծրագրով: ՀՀ–ում ներդրվել է 2008–09 ուս. տարվանից, 49 դպրոցում (շուրջ՝ 900 երեխա):

ՆԵՐԱՐԿԻՉ, 1. **ինժեկտոր** (ֆրանս.՝ injecteur, < լատ. injicio – ներարկել), պահեստարանի մեջ գազ կամ հեղուկ ներմղող շիթ. սարք. օր.՝ սնուցող ջուրը շոգեհնոց ներմղելու, նաշ–ի գլանի մեջ վառելանյութ ներցայտելու համար: Հիմն. արագացուցչի մեջ լիցքավորված մասնիկներ ներմղող արագացուցիչ (սովորաբար՝ գծային):


2. **Շպրից** (գերմ.՝ Spritze, < spritzen – ցողել), բժշկ. գործիք. 0,5 և ավելի *մլ* տարողությամբ գլանիկ՝ ծայրը ասեղով՝ դեղանյութն օրգանիզմ ներարկելու (ցողելու), խոռոչներից (կրծքամզի, հոդերի ևն) հեղուկները (թարախ, արյուն, արտաքիրտ) արտածծելու ևնի համար:

ՆԵՐԲՈՂ, **օդա** (հուն.՝ ōdē – երգ), 1. հնագույն չափածո ժանր, գովասան. կամ փառաբան. բովանդակությամբ բանաստեղծություն: Ն–ին տեսականորեն անդրադարձել է Ն. ***Բուալոն*** («Քերթողական արվեստ», 1674): Ն–ներ են գրել Պինդարոսը, Հորացիոսը, Վոլտերը, Ռուսոն, Մ. Յ. Լոմոնոսովը, Ա. Ս. Պուշկինը և ուր.: Հայ գրկ–յան մեջ հայտնի են Դ. Վարուժանի («Ձոն»), Սիամանթոյի («Նավասարդյան աղոթք առ դիցուհին Անահիտ»), Ե. Չարենցի («Էպիքական լուսաբաց» և «Գիրք ճանապարհի» ժող–ներում) Ն–ները: 2. (Երաժշտ.), XVII դ–ից՝ վոկալ–գործիք. (ավելի ուշ՝ գործիք.) երկ որևէ նշանավոր անձի պատվին: Հետագայում «Ն.» են անվանել հանդիսավոր, հիմնի բնույթի ստեղծագործությունները (Ֆ. Լիստ, Ժ. Բիզե, Ս. Ս. Պրոկոֆև, Ա. Խաչատրյան և ուր.):

ՆԵՐԳԱԼ, **Ներգաղ**, հողածին (խթոնային) աստվածություն մի շարք կրոններում ու դից–յություններում, մարմնավորում է անդրշիրիմյան ուժերը: Կենդ. աշխարհում Ն. են համարվում ամեն տեսակի զազիրքները, գարշանքները: Շումերա–աքքադ. դից–յան մեջ՝ *Էրեշկիգալ* աստվածուհու ամուսինը: Սկզբնապես եղել է կիզիչ, կործանարար արևի մարմնավորումը, որը տենդ և ժանտախտ է տարածել, համարվել է նաև պատերազմի աստված:

ՆԵՐԳԱՂԹ, իմիգրացում (լատ.՝ immigrare – բնակություն հաստատել), մշտ. կամ ժամանակավոր բնակության համար այլ երկրների քաղաքացիների մուտքը տվյալ երկիր: Հայերի վերադարձը Հայաստան կոչվում է ***հայրենադարձություն***:

ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐ, **իմիգրանտներ** (լատ.՝ immigro – բնակություն հաստատել) (կենսբ.), կենդանիներ, որոնք առաջացել ու զարգացել են այլ վայրերում և միայն հետագայում են բնակություն հաստատել տվյալ տարածքում:



ՆԵՐԳԾՎԱԾ ԱՆԿՅՈՒՆ, շրջանագծի մի կետից (C) դուրս եկող 2 լարերով (CA և CB) կազմված անկյունը (< ACB, նկ.):

ՆԵՐԴԱՇՆԱԿ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ (մաթ.), ***համեմատություն***, որի միջին անդամներն իրար հավասար են, իսկ վերջին անդամն առաջին և միջին անդամների տարբերությունն է՝ $a : b = b : (a - b) : a$ թվի վերածումը b և $a - b$ գումարելիների կոչվում է ներդաշնակ բաժանում կամ ***ոսկե հարաբույթ***:


ՆԵՐԴԱՇՆԱԿ ՄԻՋԻՆ, γ մեծությունը, որի հակադարձը (a_1, a_2... a_n) տվյալների հակադարձների միջին թվաբանականն է՝ $\gamma = n / (1/a_1 + 1/a_2 + \ldots + 1/a_n)$:

ՆԵՐԴԱՇՆԱԿ ՇԱՐՔ, $1+\frac{1}{2}+\frac{1}{3}+\ldots+\frac{1}{n}+\ldots$ թվային շարքը: Ն. շ–ի անդամները ձգտում են զրոյի, սակայն Ն. շ. տարամիտվում է:

ՆԵՐԴԱՇՆԱԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, մաթ–ի բաժին. կապված է պարբեր. շարժընթացները պարզագույն ներդաշնակ բաղադրիչների՝ հարմոնիկների վերածելու հետ:

ՆԵՐԴԱՇՆԱԿ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐ, x տատանող. մեծության պարբեր. փոփոխությունները (օր.՝ ճոճանակի շեղումը հավասարակշռության դիրքից, շղթայում փոփոխ. հոսանքի լարումը ևն) ժամանակի ընթացքում՝ սինուսոիդ. օրենքով՝ $x=A\sin(\omega t + \phi)$, որտեղ A–ն Ն. տ–ի ամպլիտուդն է, ω–ն՝ անկյուն. հաճախությունը, φ–ն՝ տատանման սկզբն. փուլը:

ՆԵՐԴԱՇՆԱԿ ՖՈՒՆԿՑԻԱ, մի քանի փոփոխականի ֆունկցիա, որն անընդհատ է որոշակի տիրույթում իր 2–րդ կարգի մասնական ածանցյալների հետ և այդ տիրույթում բավարարում է ***Լապլասի հավասարմանը***:



ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ, փիլ–գեղ. կատեգորիա. նշանակում է մասի և ամբողջի, ներքինի և արտաքինի, ձևի և բովանդակության համաչափություն և միասնություն: Հինհուն. փիլ–յան մեջ Ն. հասկացվել է իբրև տիեզերքի կազմակերպվածություն՝ ի հակադրություն ***քաոսի***: Գեղագիտ–յան մեջ դրսևորվում է որպես գեղեցիկի էական հատկություն:

ՆԵՐԴՐԱԿ, սահքի առանցքակալի փոխովի դետալ, որին հենվում է պտտվող լիսեռի կամ առանցքի դարձյակը: Ն–ները սովորաբար երկմետաղական են, լինում են ամբողջ. կամ մասնատվող՝ կազմված 2 կամ ավելի մասերից:

ՆԵՐԵՏՎԱ (Neretva), գետ Բոսնիայում, Հերցեգովինայում և Խորվաթիայում: Երկ.՝ 218 *կմ*, ավազանը՝ 5,6 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 280 *մ*^{3}/*վ*: Կա ջրէկ: Հատում է Դինարյան լ–ները և թափվում Ադրիատիկ ծով: Ստորին հոսանքում նավարկելի է:

ՆԵՐԵՈՒՀԻՆԵՐ, ծով. հավերժահարսներ հուն. դից–յան մեջ: Ծովերի աստված Նեբևսի 50 դուստրերը, որոնց անունները մատնանշում էին ծովի փոփոխականությունը, խորությունը, քմահաճությունը ևն:

ՆԵՐՋԱՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **Էնդոկրինոլոգիա** (< *Էնդո*..., հուն.՝ krino – վերամշակել և ...*լոգիա*), գիտ–յուն. ուսումնասիրում է ներզատիչ գեղձերի կառուցվածքն ու ֆունկցիաները, նրանց կենսագործունեության նյութերը՝ հորմոնները, նաև այդ գեղձերի հետ կապված հիվանդությունները:

ՆԵՐՋԱՏԻՉ ԳԵՂՁԵՐ, **Էնդոկրին գեղձեր**, մարդկանց և կենդանիների օրգաններ, որոնք արտատար ծորաններ չունեն, և նրանց արտադրած նյութերը (հորմոններ) թափանցում են անմիջապես արյան ու ավշի մեջ: Դրանց ֆունկցիաների խանգարման հետ կապված հիվանդությունների խումբը կոչվում է **ներզատական հիվանդություններ**:

ՆԵՐՐԻՆԳԻ ԿՈՒՐԱՄԱՄՈՒԿ (Nannospalax nehringi), ***կուրամկների*** ընտանիքի կրծող կաթնասուն: Մարմնի երկ.՝ մինչև 260 *մմ*, կ. զ.՝ մինչև 450 *գ*: ՀՀ–ում հանդիպում է Շիրակի, Ամասիայի և Աշոցքի սարահարթերում, Լոռու մարզի հվ., Արագածոտնի մարզի արմ. և հս–արմ. շրջաններում: Ակտիվ է ողջ տարին: Վնասում է բազմամյա մշակովի խոտաբույսերի դաշտերը: Համաճարակաբան. նշանակություն չունի:

ՆԵՐԻՄ (Nėris) Սալոմեա (Բաչինսկայտե–Բույչենե, 1904–1945), լիտվացի բանաստեղծուհի: Լիտվ. ԽՍՀ ժող. բանաստեղծուհի (1954, հետմահու): Հեղինակ է «Վաղ առավոտյան» (1927), «Կոտրվող սառույցի

վրայով» (1935), «Սի՛րտ, երգի՛ր կյանքը» (1943), «Սոխակը չի կարող չերգել» (1945), «Իմ երկիրը» (հրտ.՝ 1946) ժող-ների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1947, հետմահու):

ՆԵՐԻՏԱՅԻՆ ԳՈՏԻ (հուն.՝ nerite – ծով. խխունջ), Համաշխ. օվկ-ի ծանծաղ մասը՝ հիմնականում՝ մայրցամաք. ծանծաղուտի սահմաններում: Բնորոշ են ջրի մեծ շարժունությունը, ջերմաստիճանի փոփոխականությունը, արեգակի լույսի զգալի ներթափանցումը, բուս. և կենդ. աշխարհների բազմազանությունը: Ն. գ-ու սահմաններում գլխավորապես կուտակվում են բեկորային գոյացումներ (գլաքարեր, խեցաքարեր):

ՆԵՐԾԻՆ ՇԱՐԺԸՆԹԱՑՆԵՐ, երկրբ. երևույթներ, որոնք տեղի են ունենում Երկրի սեփ. կինետիկ էներգիայի հաշվին: Այդ էներգիայի գլխ. աղբյուրներն են մոլորակի ծանրահակ կծկումն ու տարբերակումը, պտույտի մակընթացային արգելակումը, ռադիոակտիվ տարրերի տրոհումը: Իրենց մասշտաբներով կարևոր են հրաբուխները, ինտրուզիաները, երկրաշարժերը, մետամորֆիզմը, մետասոմատոզը:

ՆԵՐԾԾՈՒՄ, **ռեսորբցիա** (լատ.՝ resorbeo – կլանել) (ֆիզիոլոգ.), բջջ. տարրերի միջոցով տարբեր նյութերի անցումն արյան և ավշի մեջ: Կատարվում է մարսող. համակարգում (հիմնականում՝ աղիներում), նաև թոքերի, կրծքամզի, արգանդի, միզապարկի խոռոչներում, մաշկի մակերևույթից ևն:

ՆԵՐԿԱ, կարմիր (oncorhynchus nerka), սաղմոնաձկների ընտանիքի (երբեմն՝ քաղցրահամ ջրերի) ձուկ: Երկ.՝ մինչև 65 *սմ*, կ. զ.՝ մինչև 3,5 *կգ*: Ապրում է Խաղաղ օվկ-ի հս-արմ. մասի ավազանում, ձուղպադրում՝ Հս. Ամերիկայի, Կամչատկայի, Կուրիլյան կղզիների և Հոկայդո կղզու աղբյուրների ջրերում: Արդյունագործ. արժեքավոր ձուկ է: Ունի պահպանության կարիք:

ՆԵՐԿԱԼՈՒՄ (միջազգ. իրավունք), պատերազմող երկրներից մեկի՝ հակառակորդ երկրի քաղաքացիների կամ չեզոք երկրի՝ պատերազմող երկրների զինվորների բռնությամբ պահելը: Կարգավորվում է 1949-ի Ժնևի և 1907-ի Հաագայի համապատասխան համաձայնագրերով:

«ՆԵՐԿԱՅ», գր. ամսագիր (1949–50, Փարիզ): Խմբ.՝ Լևոն Չորմիսյան:

«ՆԵՐԿԱՅ», գր., հաս. ամսագիր (1961–72, Բուենոս Այրես): Խմբ.՝ Վահե Պահատրյան:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՑՈՒԹՅՈՒՆ (քաղաքաց. իրավունք), որոշակի լիազորություններով որևէ անձի (ներկայացողի) անունից ու նրա օգտին մյուսի (ներկայացուցչի) կնքած գործարքը կամ իրավաբ. այն գործողությունների կատարումը, որով ներկայացվողի համար առաջանում, փոփոխվում և դադարում են քաղաքաց. իրավունքներն ու պարտականությունները: Ն. կիրառվում է այն դեպքերում, երբ անձինք այս կամ այն պատճառով (անգործունակություն, ոչ լրիվ գործունակություն, հիվանդություն, զբաղվածություն, մասնագիտ. գիտելիքների պակաս ևն) զրկված են իրավաբ. գործողություններն անձամբ կատարելու հնարավորությունից:

ՆԵՐԿԱՆՅՈՒԹԵՐ, օրգ. միացություններ, որոնք կլանում կամ վերափոխում են տեսանելի (նաև մոտակա ԱՄ և ԵԿ) լույսի էլեկտրամագնիս. ճառագայթների էներգիան և օգտագործվում են նրանց այդ հատկությունն այլ նյութերի հաղորդելու նպատակով: Ըստ քիմ. կառուցվածքի և մոլ-ում որոշակի գունակիր խմբերի առկայության՝ Ն. տարբերում են ազոտներկանյութեր, նիտրաներկանյութեր (NO_2), նիտրոզաներկանյութեր (NO), արիլմեթանային (Ar–C–Ar), ծծմբային (–S–), քինոնիմինային, ինդիգոակերպ, ազոմեթինային, անտրաքինոնային: Ըստ կիրառման բնագավառների և եղանակների՝ լինում են դիսպերս, ուղղակի, կուբային, ծծմբային, թթվային, հիմնային, օքսիդացնող, սառը ներկման, մորթու ներկման ևն Ն.: Օգտագործում են մանրաթելերը, գործվածքները, կաշին, մորթին, թուղթը, պլաստմասսաները ներկելու և նրանց լյումինեսցենտող հատկություններ հաղորդելու համար:

ՆԵՐԿԱՐԱՐ (Coracias garrulous), ալկիոնանմանների կարգի ներկարարների ընտանիքի թռչուն: Երկ.՝ մոտ 34 *սմ*: ՀՀ-ում հանդիպում է ապրիլի վերջ–սեպտ.: Մնվում է միջատներով, մանր անողնաշարներով ու կրծողներով, նաև խաղողով:

ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ Խաչատուր Վլադիմիրի (ծ.1954), ֆիզիկոս-տեսաբան: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1994): Վլադիմիր Ս. *Ներկարարյանի* որդին: Աշխ-ները վերաբերում են բյուրեղի էքսիտոն. սպեկտրում օպտիկ. ոչ գծային բնույթի հետազոտություններին: Բացահայտել է մակերևույթ. պլազմոն-պոլյարիտոնների գերկիզակետման երևույթը, որը հնարավորություն է տալիս մեծացնելու նանոմետր. տեսածրող օպտիկ. մանրադիտակի լուծունակությունը: ԵՊՀ ոսկե մեդալ (2012):

ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ Վլադիմիր Նիկողոսի (1914–1994), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1969), պրոֆ. (1971): Աշխ-ները վերաբերում են ԽՄԿԿ, Այսրկովկասում ու Հայաստանում հեղ. շարժումների և կոմ. կազմ-յունների պատմությանը:

ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ Վլադիմիր Սմբատի (1928–1993), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (1973), պրոֆ. (1975): Խաչատուր *Ներկարարյանի* հայրը: Աշխ-ները վերաբերում են աշխ-ի արտադրողականության, արտադրող. ու ոչ արտադրող. աշխ-ի, ինչպես նաև տնտեսագիտ-յան տեսության հարցերին:

ՆԵՐԿԵՐ, գունանյութերի համասեռ կախույթները թաղանթաոաջացնող (սոսնձող) նյութերում: Որպես թաղանթաոաջացնող նյութեր՝ օգտագործում են ձեթերը, օլիֆները (յուղաներկեր), լաքերը (արծնային Ն.), պոլիմերների ջր. էմուլսիաները (էմուլսային Ն.), բուս. կամ կենդ. սոսինձները, հեղուկ ապակին (սիլիկատային Ն.) ևն: Ներկվող մակերևույթի վրա այդ նյութերը Ն-ին հաղորդում են անհրաժեշտ մեխ. հատկություններ (ամրություն, կարծրություն), պայմանավորում են Ն-ի կպչունակությունը, սոսնձում գունանյութի և լցոնի մասնիկները: Ն. օգտագործում են առարկաներին գեղեցիկ տեսք տալու և մակերևույթը քայքայումից պաշտպանելու նպատակով:

ՆԵՐՄԵՏԱԼԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, **մետաղական միացություններ, մետալիդներ**, քիմ. միացություններ, որոնցում ատոմները միացած են *մետաղական կապերով*: Մեծ մասամբ ունեն փոփոխ. (բերթոլիդներ), երբեմն՝ կայուն (դալթոնիդներ) բաղադրություն: Ն. մ. կիրառվում են որպես մագնիս. նյութեր, կիսահաղորդիչներ և գերհաղորդիչներ, ջերմակայուն համաձուլվածքների, բարձրամուր կառուցվածք. նյութերի, տպագր. համաձուլվածքների կարևոր բաղադրիչներ:

ՆԵՐՔՆՂՈՒՄ, 1. (հոգեբ.) մեկ կամ մի քանի անձանց (սոցիալ. խումբ) վրա խոսքի, գործողությունների, արտահայտիչ շարժումների օգնությամբ կատարվող ներգործություն, որը շրջանցում է ներշնչվողի գիտակցությունն ու կամքը և հանգեցնում ներշնչողի համար ցանկալի մտքերի առաջացման: 2. (Բժշկ.) հոգեթերապիայի մեթոդ, բուժման նպատակով հիվանդի հոգեկանի վրա նպատակաուղղված խոսքի ազդեցությունը: Իրականացվում է թե՛ արթմնի վիճակում, թե՛ *հիպնոսի* ժամանակ:

ՆԵՐՈՆ Տիբերիոս Կլավդիոս (Tiberius Claudius Nero, 37–68), Հռոմի կայսր՝ 54-ից՝ Հուլիոս Կլավդիոսների հարստությունից: Ն-ի դաժան քաղ-յունը հարուցել է հռոմ. բոլոր խավերի դժգոհությունը:

Հայաստանում Հռոմի ազդեցությունը վերականգնելու նպատակով Հայաստանի ու Պարթևաստանի դեմ սկսել է պատերազմ (54–64), որն ավարտվել է Հռոմի պարտությամբ: *Հռանդեայի պայմանագրով* Հայոց թագավոր *Տրդատ Ա*-ն մեկնել է Հռոմ՝ Ն-ից ստանալու իր թագը: Ն. մեծ պատիվներով ընդունել և թագադրել է նրան, տրամադրել դրամական միջոցներ, որով վերակառուցվել է ավերված Արտաշատ մայրաքաղաքը:

ՆԵՐՊԱ (Pusa), մաշկոտանիների կարգի իսկական փոկերի ընտանիքի կաթնասուն կենդանի: Տես նաև *Օղակավոր ներպա*:

ՆԵՐՊԼԱԶՄԱՅԻՆ ՅԱՆՑ, բջջ. օրգանոիդ, թաղանթով սահմանազատված խողովակիկների, բշտիկների և «խոռոչների» համակարգ: Տեղակայված է բջջապլազմայում: Մասնակցում է նյութափոխանակությանը՝ ապահովելով շրջակա միջավայրի նյութերի փոխադրումը բջջապլազմայի մեջ և առանձին՝ միջբջջ. կառուցվածքների միջև:

ՆԵՐՍ (Nurse) Պոլ (ծ. 1949), անգլիացի մոլ. կենսաբան: Աշխ-ները վերաբերում են բջիջների կիսման մեխանիզմներին: Նույնականացրել է բջջ. ցիկլի կարգավորմանը մասնակցող խմորասնկերի գենը և դրան նման՝ մարդու՝ բջջի կիսման կենսընթացի գործարկման համար պատասխանատու ֆերմենտը կոդավորող գենը:

Նորելյան մրց. (2001, Թ. *Հանտի* և Լ. *Հարտուելի* հետ):

ՆԵՐՍԵՀ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ, Հայոց իշխան՝ 689–693-ին: Իշխան. կալվածքն է եղել Շիրակ գավառը: Թալինում կառուցել է եկեղեցի, որը հայտնի է Ն. Կ-ի անունով: Հովանավորել է մտավորականների (Գրիգոր Արշարունի, Անանիա Շիրակացի ևն): Ն. Կ-ի պատվերով հուն-ից հայ. է թարգմանվել Սոկրատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական պատմությունը»:

ՆԵՐՍԵՀ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻ ԵԿԵՂԵՑԻ, **Սուրբ Աստվածածին եկեղեցի**, VII դ-ի ճարտ. հուշարձան ՀՀ Թալին բ-ի հս. եզրին: Կառուցել է *Ներսեհ Կամսարականը*: Խաչաձև գմբեթավոր փոքր կառույց է, վերանորոգվել է 1998-ին: Հվ-արլ. կողմում՝ կանգուն կոթողին (V դ.), Գրիգոր Լուսավորչի քանդակն է, նրանից ցած՝ աղոթող խոզագլուխ Տրդատ արքայինը:

ՆԵՐՍԵՀԱՊԱՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 482, տեղի է ունեցել Սարզպան. Հայաստանի

և Պարսկաստանի զորաբանակների միջև Վասպուրականի Արտազ գվո–ի Ներսեհապատ գ–ի մոտ: Ավարտվել է հայկ. զորքերի լիակատար հաղթանակով, որից հետո Պարսից արքունիքը հարկադրված է եղել առժամանակ չմիջամտել Հայաստանի ինքնավարությանը:

ՆԵՐՍԵՍ, **Ներսես Ճիճրակացի**, V դ–ի նախարար, ազատագր. պայքարի ղեկ.: Ըստ Մովսես Խորենացու, երբ Հայոց դրածո թագավոր Շապուհ Պարսիկը (416–419) լքել է Հայոց գահը և մեկնել Պարսկաստան, հայրենասեր նախարարները Ն–ի առաջնորդությամբ ապստամբել են և Բյուզանդիայի օգնությամբ երկրից վտարել պարսկ. զորքերին: Ն. շուրջ 3 տարի պահպանել է Հայաստանի անկախությունը՝ մինչև *Արտաշես Գ*–ի գահակալումը:

ՆԵՐՍԵՍ (մոտ 478–568), հայազգի բյուզանդացի զորավար և քաղ. գործիչ: Աչքի է ընկել «Նիկե» ապստամբության ճնշման ժամանակ: Օստգոթերի դեմ պատերազմի վերջին շրջանում եղել է բյուզ. զորքերի գլխ. հրամ.: 552–ի ամռանը Տագինայում (այժմ՝ Գուալդո–Տադինո՝ Ապենինյան թ–կղզում) հաղթել է օստգոթերի արքա Տոտիլի զորքերին, նվաճել Միջին Իտալիան և Հռոմ ք–ը, իսկ 552–ի վերջերին վերջն. պարտության մատնել օստգոթերին՝ Սարնուս գետի ափին: 554–ին հետ է մղել ֆրանկների և ալեմանների հարձակումը դեպի Իտալիա: 555–567–ին՝ նվաճված Իտալիայի կառավարիչ:

ՆԵՐՍԵՍ Ա., **Ներսես Բակուր** (ծ. թ. անհտ–706), Աղվանից կաթողիկոս՝ 689–ից: Ունեցել է բյուզ. և քաղկեդոն. կողմնորոշում: Եղել է Գարդմանի եպս.: *Եղիազար* կաթողիկոսի մահից հետո, առանց Ամենայն հայոց կաթողիկոսի համաձայնության, ընտրվել է Աղվանից կաթողիկոս: Փորձել է Հայոց Արևելից կողմերում հաստատել քաղկեդոնականություն, որից դժգոհ *Եղիա Ա. Արճիշեցին*, ժամանելով Պարտավ, բանադրել է նրան, կարգալույծ արել և բանտարկել: Հրաժարվելով սննդից՝ Ն. Ա. վախճանվել է:

ՆԵՐՍԵՍ Ա. ՄԵԾ, **սուրբ Ներսես Ա. Պարթև** (մոտ 329–373), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 353–ից, ՀԱԵ տոնելի սուրբ: *Վրթանես Ա. Պարթևի* թոռը: 351–ին *Արշակ Բ*–ի հանձնարարությամբ մեկնել է Կ. Պոլիս և վերականգնել հայ–հոմ. դաշինքը: 356–ին Ն. Ա. Մ–ի նախաձեռնությամբ Տարոն գվո–ի Աշտիշատ ավանում գումարվել է հայկ. եկեղեց. կանոնադիր ժողովը: 359–ին, դժգոհելով Արշակ Բ–ի՝ առանձին նախարար. տներին հալածելու քաղ–յունից, Ն. Ա. Մ. թողել է կաթողիկոս. գահը, սակայն 364–ին արքայի խնդրանքով կրկին ստանձնել է Հայ եկեղեցու հովվապետությունը:

ՆԵՐՍԵՍ Բ ԲԱԳՐԵՎԱՆԴԻ, **Ներսես Բ Աշտարակեցի** (ծ. թ. անհտ–557), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 548–ից: Ն. Բ Բ–ու հորդորով Պարսից արքունիքը հետ է կանչել Հայաստանի մարզպան (548–552) Դենշապուհ Նիխորականին, որը փորձել էր բռնությամբ դավանափոխել հայերին: Ն. Բ Բ–ու կարևորագույն ձեռնարկումը 554–ի Դվինի եկեղեց. 2–րդ ժողովի (մարտի 29–ին) գումարումն էր:

ՆԵՐՍԵՍ Գ ՏԱՅԵՑԻ, **Իշխանցի, Շինող** (ծ. թ. անհտ–661), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 641–ից: Կաթողիկոս է դարձել *Թեոդորոս Ռշտունու* աջակցությամբ: Կառուցել Խոր վիրապի Սբ Գրիգոր մատուռը, Զվարթնոցի Սբ Գրիգոր կաթողիկեն: 645–ին գումարել է Դվինի 5–րդ ժողովը, 648–ին՝ 6–րդ ժողովը: Ն. Գ Տ–ու օրոք է հաստատվել Հայ եկեղեցու Վարագա Սբ Խաչի տոնը (653), իսկ Վարագա լ–ան այն վայրում, որտեղ հայտնաբերվել է Հիսուս Քրիստոսի խաչափայտի մասունքը, կառուցել է Սբ Նշան եկեղեցին:

ՆԵՐՍԵՍ Ե ԱՇՏԱՐԱԿԵՑԻ (1770–1857), ազգ–ազատագր. շարժման գործիչ, Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1843–ից: Երևանյան 1–ին արշավանքի ժամանակ (1804) աջակցել է ռուս. զորքերին: 1814–28–ին եղել է Վիրահայոց թեմի առաջնորդը, Թիֆլիսում հիմնադրել է *Ներսիսյան դպրոցը* (1824): 1826–28–ի ռուս–պարսկ. պատերազմի ժամանակ կազմակերպել է հայկ. կամավոր. գումարտակներ, անձամբ մասնակցել Երևանի, Էջմիածնի, Սարդարապատի ազատագրմանը: Երևանի գրավումից (1827–ի հոկտ. 1) հետո՝ նշանակվել է երկրամասի ժամանակավոր վարչության անդամ: Նշանակալի դեր է կատարել Պարսկաստանից հայերի Հայաստան տեղափոխման գործում: Ընտրվելով կաթողիկոս՝ կարգավորել է Մայր աթոռի և Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի հարաբերությունները: Գրեթե անտեսել է ՀԱԵ իրավունքները սահմանափակող *«Պոլոժենիե»* կանոնադրության որոշումները: «Ա. Նևսկի» շքանշան (1828):

ՆԵՐՍԵՍ ԵՐԵՎԱՆՑԻ Հովհաննեսի (1655–1705), եկեղեց. և քաղ. գործիչ: 1679–ին Լվովում ձեռնադրվել է վրդ.: 1686–ին Բուդա ք–ը թուրք. լծից ազատագրելու գործին ունեցած ծառայության համար նշանակվել է Ավստրիայի արքունիքի մառանապետ, ապա՝ Վիեննայի Սբ Ստեփանոս Նախավկա տաճարի կանոնիկոս: Միջնորդ է եղել *Իսրայել Օրու* և Ավստրիայի կայսր Լեոպոլդ I–ի հանդիպմանը:

ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ (ավազանի անունը՝ Սմբատ, 1153–1198), աստվածաբան, մեկնիչ, բանաստեղծ, շարականագիր: *Օշին Բ*–ի որդին: 1175–ին *Գրիգոր Դ Տղան* նրան կարգել է Տարսոն ք–ի արք.: Ն. Լ. թողել է գր. հարուստ ժառանգություն. «Պատարագի մեկնութիւն»–ը (հրտ.՝ 1847, թարգմանվել է բազմաթիվ լեզուներով) մեկնող. գրկ–յան նշանակալի երևույթ է: Հեղինակ է «Ատենաբանութիւն եւ ճառք» (հրտ.՝ 1749), «Դրուատ պատմագրաբար» (հրտ.՝ 1788), «Թուղթ առ Լևոն արքայն հայոց» (հրտ.՝ 1838), շարականների, թարգմ. գործերի: Ասորից և հուն–ից թարգմանել է իրավ. նորմեր, որոնք հայտնի են որպես *Ներսես Լամբրոնացու օրենքներ*:

ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑՈՒ ՕՐԵՆՔՆԵՐ, իրավ. նորմեր, որոնք 1191–96–ին ասորից ու հուն–ից թարգմանել է *Ներսես Լամբրոնացին*՝ հարմարեցնելով հայ իրականությանը: Կարգավորել են հայ ավատ. քաղաքաց., ժառանգ., ամուսնա–ընտանեկան, քր., զինվ. իրավահարաբերությունները:

ՆԵՐՍԵՍ ՄՇԵՑԻ, **Տարոնացի** (XIII դ–ի սկիզբ–1284), մանկավարժ, գրիչ: 1271–ից՝ րաբունապետ: 1271–ին նշանակվել է *Վարդան Արևելցու* հիմնադրած Խոր վիրապի դպրոցի ուսուցչապետ և դպրոցը տեղափոխել Մշո Առաքելոց վանք: 1281–ին դպրոցը ժամանակավորապես փակել է, իր աշակերտ *Եսայի Նչեցու* հետ մեկնել է Մեծոփավանքի դպրոց, իսկ 1282–ին՝ Վայոց ձոր: Պռոշյան իշխան. տունը Ն. Մ–ուն է տրամադրել *Աղբերց վանքը*, որտեղ նա շարունակել է ուսուցումը: Ն. Մ–ու մահից հետո էլ ուսումնագիտ. կենտրոնը շարունակել է գործել և հայտնի է դարձել *Գլաձորի համալսարան* անվամբ:

ՆԵՐՍԵՍ ՄՈԿԱՑԻ, **Վանեցի, Բեղլու** (մոտ 1575–1625), բանաստեղծ, կրթ–լուսավոր. գործիչ, փիլ.: Ն. Մ–ու գործունեությունը կապված է Բաղեշի Ամրդոլու վանքի Հարանց անապատի և Լիմ անապատի ու իր հիմնադրած դպրոցի (1622) հետ: «Օրհնեալ Տէր Յիսուս փրկիչ» տողով սկսվող ներբողը նվիրված է Հարանց անապատի հիմնադրմանը, «Ի հոլովել ժամանակին» տողով սկսվողը՝ Երուսաղեմի գրավմանը (1187): Ն. Մ–ու փիլ. հայացքները դրսևորվել են «Վիճաբանութիւն երկնի եւ երկրի» այլաբան. բանաստեղծության մեջ:

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ, **Ներսես Դ Կայեցի** (մոտ 1100–1173), Հայոց կաթողիկոս՝ 1166–ից: ՀԱԵ տոնելի սուրբ, բանաստեղծ, մատենագիր, երաժիշտ–կատարող: *Գրիգոր Մագիստրոս Պահլավունու* ծոռը, *Գրիգոր Գ Պահլավունու* եղբայրը: Ն. Շ. թողել է գր. հարուստ ժառանգություն՝ արձակ և չափածո: Արձակից մասնավորապես հայտնի է «Թուղթ ընդհանրական» (1166, հրտ.՝ 1788) բարոյախրատ. ուղերձը՝ ուղղված հայ ժողղ–ին: Գրիգոր Նարեկացուց հետո Ն. Շ. զարգացրել է հայ չափածո խոսքը թե՛ բովանդակության, թե՛ ձևի առումով: Նա *շարականին* հաղորդել է քաղաքաց. բովանդակություն («Նորահրաշ պսակաւոր», «Առաւօտ լուսոյ», «Աշխարհ ամենայն» ևն): Ն. Շ–ուց պահպանվել են մանակավարժ–ուսուցող. բնույթի ոտանավորներ, ուղերձներ, բանքեր, ավելի քան 300 չափածո հանելուկներ: Հանելուկի, որպես գր. առանձին տեսակի ստեղծումը, մշակումը կապվում է Ն. Շ–ու հետ: Ն. Շ–ու «Վիպասանութիւն...» (1121, հրտ.՝ 1643), «Ողբ Եդեսիոյ» (1145, հրտ.՝ 1810), «Բան հաւատոյ» (1151) և «Յիսուս Որդի» (1152, հրտ.՝ 1643) ստեղծագործությունները գեղ. չափածո խոսքի նոր տեսակներ են, հայ վիպերգ. և վիպաքնար. պոեմների նախօրինակները:

Ն. Շ–ու երաժշտ. ստեղծագործությունները (200–ից ավելի շարականներ, Պատարագի ու ժամագրքի երգեր) արտացոլում են հայոց հոգևոր երգարվ–ի (մասնավորապես՝ երգեցողության) ուշ միջնադար. պատկերը, միաժամանակ բացահայտում են այդ արվ–ի հին ու հնագույն բազմաթիվ շերտեր:

ՆԵՐՍԵՍ ՊԱԼԻՄՆԵՑ, **Պալիենց** (XIII դ–ի վերջ–1363), մատենագիր, Ուրմիայի եպս.: Հարելով ունիթորներին՝ հրաժարվել է եպս–ի կոչումից, 1336–ին մեկնել է Կիլիկիա, քարոզել կաթոլիկություն: 1338–ին Հռոմի Բենեդիկտոս XII պապը նրան կարգել է Մանազկերտի արք.: 1341–ին Ն. Պ. պապին է ներկայացրել ՀԱԵ–ի «մոլորությունների» վերաբերյալ 117 «մեղադրանք»: 1348–51–ին թարգմանել է Մարտինոս Լեհացու (Օպավիացի, XIII դ.) «Ժամանակագրությունը» որի որոշ հատվածների հավելել է հայոց պատմությանն առնչվող ժամանակագր. տեղեկություններ («Մանր ժամանակագրություններ XIII–XIV դդ.», կազմ.՝ Վ. Հակոբյան, հ. 2, 1956): Լատ. է թարգմանել «Մաշտոց» ծիսարանը՝ հավելելով պատմ. հիշատակագրություններով:

ՆԵՐՍԵՍՅԱՆ Անայիս Պետրոսի (ծ. 1937), բանաստեղծուհի, պատմաբան: Գրում է ռում.: Հեղինակ է «Հայերու մասին այլ վավերագրեր Վատիկանի գաղտնի դիւանաթուղթերուն մէջ» (1975), «Հայկական ներկայութիւնները ռումէն մատենագիտութեան մէջ» (1988) և այլ հոդվածների, «Ապակե երգիչը» (1973), «Քնարական պատկերներ» (1975), «Անցման կնիքը» (1978), «Արևային կշիռ» (1980) բանաստեղծությունների ժող-ների:

ՆԵՐՍԵՍՅԱՆ Արմեն Կոնստանտինի (ծ. 1952), փորձարար-ուռուցքաբան, գենետիկ: Կենսբ. գիտ. դ-ր (1996), պրոֆ. (2005): Աշխ-ները վերաբերում են կենսաբանորեն ակտիվ միացությունների ազդեցությանը մուտածնության և քաղցկեղածնության վրա:

ՆԵՐՍԵՍՅԱՆ Արմեն Պետրոսի (ծ. 1964), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (2005): Աշխ-ները վերաբերում են քվանտ. մեխանիկայի ինտեգրվող համակարգերին, գերհամաչափության հարցերին:

ՀՀ նախագահի մրց. (2010), ՀՀ «Անանիա Շիրակացի» մեդալ (2008):

ՆԵՐՍԵՍՅԱՆ Լաուրա Բախշիի (ծ. 1937), ֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ-ր (1995): Աշխ-ները վերաբերում են օրգանիզմի ընդերային ֆունկցիաների կենտր. կարգավորմանը, մասնավորապես՝ սիրտանոթ. և շնչառ. համակարգերի լիմբիկ, նյարդաքիմ. կարգավորման մեխանիզմներին: ԽՍՀՄ ԳԱ մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի գիտխորհրդի վեզետատիվ նյարդ. համակարգի բաժնի գիտքարտուղար (1978–91), Ուղեղի հետազոտության միջազգ. կազմ-յան (1986–ից), Եվրոպ. նյարդագիտ. ընկ-ների դաշնության (1997–ից) անդամ:

ՆԵՐՍԵՍՅԱՆ Հանրի Բարսեղի (ծ. 1936), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1976), պրոֆ. (1989): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1986–ից): Աշխ-ները վերաբերում են ինտեգրալ և դիֆերենցիալ (նաև ուշացող արգումենտով) հավասարումների համար եզրային խնդիրներից ծագող երկօրթոգոնալ վերլուծությունների հետազոտմանը, հաշվող. մաթ-ի առանձին խնդիրների: Տվել է Վոլտերայի երկրորդ սեռի հավասարման գաղափարի ընդհանրացումը: Իրական բնութագրիչներով (թույլ հիպերբոլային) հավասարումների համար ***Կոշիի խնդրի*** հետազոտության ասպարեզում ստացել է կարևոր արդյունքներ:

ՆԵՐՍԵՍՅԱՆ Վրեժ Դավթի, **Տեր Ներսես** (ծ. 1948), պատմաբան, աստվածաբան: Փիլ. դ-ր: 1975-ից՝ Բրիտ. թանգարանի հայկ., 1987-ից՝ Քրիստոնյա Արևելքի բաժնի վարիչ: Աշխ-ները վերաբերում են Հայ եկեղեցու և գրքի պատմությանը, աստվածաբանությանը, մանրանկարչության արվ-ին: Մեծ Բրիտանիայում հայտնաբերել է XII–XVII դդ-ի հայ. 280 ձեռագիր, կազմել «Հին հայկական գրքերի գրացուցակ. 1512–1850» (անգլ., 1980): Լոնդոնի թագավոր. ասիական ընկ-յան անդամ (1988):

ՆԵՐՍԵՍՅԱՆ ՎԱՐԺԱՊԵՏ, 1. **Կ. Պոլսի,** հիմնադրվել է 1836-ին: Եղել է երկսեռ՝ երկրորդ. վարժարանի ծրագրով, 4 բաժնով՝ կրթ. պարտեզ (3–5 տարեկան), նախակրթ. ընտելարան (5–7), միջին նախակրթարան (7–9), վերին բաժին (9–14): Գործել է մինչև 2010-ական թթ-ը, վերջին շրջանում՝ գիշերօթիկ: 2. **Այնթապի** (Կիլիկիա), հիմնադրվել է 1856-ին: Եղել է արական 6-ամյա նախակրթարան՝ ծաղկոցի առանձին բաժնով: Փակվել է 1915-ին:

ՆԵՐՍԵՍՅԱՆ Ե Վլադիկ Սմբատի (1938–2005), իրավաբան: Իրավաբ. գիտ. դ-ր (1979): ՌԳԱ ակադ. (2000): Իրավունքի և պետության լիբերտարա-իրավաբ. տեսության հիմնադիրը: Աշխ-ները վերաբերում են իրավունքի փիլ-յան, իրավաքաղ. մտքի տեսության և պատմության, իրավաբ. գիտ-յունների մեթոդաբանության խնդիրներին: Մասնակցել է «Նոր փիլիսոփայական հանրագիտարանի» (ռուս., հ. 1–4, 2000) պատրաստմանը: Եղել է իրավունքի փիլ-յան միջազգ. ընկերակցության ռուս. բաժանմունքի նախագահ:

ՆԵՐՍԵՍՈՎ Իգոր Լևոնի (1920–1995), երկրաշարժագետ: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1953): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (1982): Աշխ-ները վերաբերում են երկրակեղևի և վերին միջնապատյանի կառուցվածքի ուսումնասիրման և երկրաշարժերի կանխատեսման նոր մեթոդների մշակմանն ու երկրաշարժաշրջանացման խնդիրներին: Երկրաշարժագետների միջազգ. միության փոխնախագահ (1982–ից):

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքանշաններ:

ՆԵՐՍԻՍՅԱՆ Անահիտ Սերգեյի (ծ. 1954), դաշնակահար, մանկավարժ: ԵՊԿ պրոֆ. (2003): ՀՀ վաստ. արտիստ (1983): 1981-ից՝ Հայֆիլհարմոնիայի մենակատար:

Այսրկովկասյան IV (Բաքու, 1972), Յ. Ս. Բախի անվ. միջազգ. (Լայպցիգ, 1-ին մրց., 1980), Հայաստանի երիտասարդ. (1985) մրցույթների դափնեկիր:

ՆԵՐՍԻՍՅԱՆ Աշխեն Գրիգորի (1893–1965), օդերևութաբան: ՀՀ օդերևութաբան. ծառայության հիմնադիրներից: Աշխարհագր. գիտ. թեկնածու (1947): Աշխ-ները վերաբերում են Հայաստանի կլիմայի առանձնահատկություններին, օդերևութաբանությանը:

ՆԵՐՍԻՍՅԱՆ Աշոտ Արտաշեսի (ծ. 1962), պատմաբան, խմբ.: Պատմ. գիտ. դ-ր (2008), պրոֆ. (2011): 2011-ից՝ ***«Ակունք»*** հանդեսի գլխ. խմբ.: Հեղինակ է «Գևորգ Չավուշի սպանության առեղծվածը» (1992), «Ազգային ազատագրական պայքարը Տարոնում. 1894–1908 թթ.» (1999), «Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն» (գիրք 1, 2, 2008–2013) աշխ-ների, դաշնակց. հայտնի գործիչների մասին կենսագրությունների:

ՆԵՐՍԻՍՅԱՆ Աշոտ Պավելի (Պարույրի, 1904–1984), դերասան: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1954): 1928–45-ին՝ Լենինականի, Բաքվի հայկ., 1945-ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնների դերասան (Սուրեն՝ Շիրվանզադեի «Պատվի համար», Հարրի՝ Կ. Մ. Սիմոնովի «Ռուսական հարց», ևն): Նկարահանվել է կինոյում («Ոսկե ցլիկ», 1955, «Սերոբի ծառը», 1978, «Խոշոր շահում», 1980, բոլորը՝ հայֆիլմ, ևն):

ՆԵՐՍԻՍՅԱՆ Արամայիս Սարգսի (1909–1973), իրավաբան: Հայաստանում առաջին իրավաբ. գիտ. թեկնածուն (1945), դոցենտ (1947): ՀԽՍՀ վաստ. իրավաբան (1971): Աշխ-ները վերաբերում են քաղաքացց. իրավունքի հարցերին:

ՆԵՐՍԻՍՅԱՆ Բաբկեն Պողոսի (1917–1986), դերասան: ՀԽՍՀ (1961), ԽՍՀՄ (1972) ժող. արտիստ: Տիգրան ***Ներսիսյանի*** հայրը: 1933–56-ին՝ Թիֆլիսի ՊՀԹ, հայկ. դրամատիկ., 1956-ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնների դերասան (Պեպո՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», Բեն Ալեքսանդր՝ Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է», Արա Գեղեցիկ՝ Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ», Միքայել՝ «Քաոս»՝ ըստ Շիրվանզադեի, Կառլ և Ֆրանց Մոոր՝ Ֆ. Շիլլերի «Ավազակներ», Նապոլեոն՝ Սարդուի և Մորոյի «Մադամ Սան-Ժեն», Գևորգ՝ Գ. Բորյանի «Նույն հարկի տակ», ևն): Նկարահանվել է կինոյում («Սայաթ-Նովա», 1960, հեռուստաֆիլմ, «Հյուսիսային ծիածան», 1960, «Սարոյան եղբայրներ», 1968, «Կամոյի վերջին սխրանքը», 1973, Հայֆիլմ, ևն): Հանդես է եկել նաև ասմունքով:

ՆԵՐՍԻՍՅԱՆ Ժենյա Առաքելի (ծ. 1931), դերասանուհի: ՀՀ վաստ. արտիստ (1976): 1953-ից՝ ԵՊՀԹ-ի դերասանուհի (Կոզետ՝ «Թշվառներ»՝ ըստ Վ. Հյուգոյի, Ֆրեկեն Փոկ՝ Ա. Լինդգրենի «Մանչուկն ու Կաղլտոնը», Ռոզալիա՝ Շիրվանզադեի «Պատվի համար», Դայակ՝ Վ. Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ», Միսիս Հիքս՝ Վ. Սարոյանի «Մարդկային կատակերգություն», ևն): Խաղացել է հեռուստաթատրոնում և ռադիորեմադրություններում: 1993-ից՝ Լոնդոնում: Հանդես է եկել մոնոներկայացումներով («Օսկարը և վարդագույն հազուստով տիկինը»):

ՀՀ ՄՆ ոսկե (2011), ՀՀ «Մովսես Խորենացի» (2012) մեդալներ:

ՆԵՐՍԻՍՅԱՆ Լեմս Սուրենի (ծ. 1946), մանկավարժ, նկարիչ: Պրոֆ. (1994): Հեղինակ է «Նատյուրմորտ: Պեյզաժ» (1990) ալբոմի, «Լեռնային գետակ» (1998), «Արագած» (1999), «Ճահճուտ» (2000), «Ծաղիկներ» (2000–01, շարք) և այլ բնանկարների, «Փշերով նատյուրմորտ» (1992), «Գարնանային նատյուրմորտ» (1998) և այլ նատյուրմորտների, նաև աշխ-ների: ՀՀ ՄԳԱ (1998), Մանկավարժ. գիտ. միջազգ. ակադ-ի թղթ. (1998), ՌԴ կրթության ակադ-ի արտ. (2004) անդամ:

ՆԵՐՍԻՍՅԱՆ Լևոն Հրաչյայի (1931–1999), գրականագետ, գեղագետ: Հրաչյա ***Ներսիսյանի*** որդին: Ուսումնասիրել է անտիկ շրջանի (մասնավորապես՝ հինհունս. պոեզիան և դրաման) և XX դ-ի ֆրանս. գրկ-ը (արսուրդի դրամա, ֆրանս. վեպ, սյուրռեալիստ. պոեզիա): Նկարահանվել է կինոյում («Երկունք», «Ապրիլ», երկուսն էլ՝ հայֆիլմ):

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (1994):

ՆԵՐՍԻՍՅԱՆ Խաչատուր Ռուբենի (1923–2001), քամանչահար, երգահան: ՀՀ վաստ. արտիստ (1977): 1945-ից՝ ՀՀ ռադիոյի ժող. գործիքների անսամբլի մենակատար: Հեղինակ է երգերի («Ելեք հայեր, ելեք քաջեր», «Կռունկները շարան-շարան» ևն), պար. («Զանգեզուր», «Եղեգնաձորցիներ», «Արցախ», «Սպասում» ևն), նաև գործիք. մեղեդիների: Ա. Իսահակյանի 100-ամյակի (1975) և Սայաթ-Նովայի անվ. (2000) համահայկ. երգի մրց-ներ:

ՆԵՐՍԻՍՅԱՆ Կամո Ռուբենի (1936–2011), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (1994), պրոֆ. (1995): Աշխ-ները վերաբերում են տնտեսագիտ-յան տեսության հարցերին, ագրար. ոլորտի և մրցակցության, սեփականության հիմնահարցերի գիտ. մշակման ու գործն. կիրառման խնդիրներին:

ՆԵՐՍԻՍՅԱՆ Հրաչյա Ներսեսի (1895–1961), դերասան: ՀԽՍՀ (1939), ԽՍՀՄ (1956) ժող. արտիստ: Լևոն ***Ներսիսյանի*** հայրը: Կ. Պոլսում մասնակցել է Արշակ

Պենկլյանի և Հայ դրամատիկ. խմբերի ներկայացումներին: Հայրենադարձել է 1922-ին: 1923-ից՝ Հայաստանի Առաջին պետթատրոնի դերասան (Խլեստակով՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», Լիր՝ Վ. Շեքսպիրի «Լիր արքա», Անհայտ՝ Մ. Ց. Լերմոնտովի «Դիմակահանդես», Պրոտասով՝ Լ. Ն. Տոլստոյի «Կենդանի դիակ», Պաղտասար աղբար»՝ Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար», Մեք Գրեգոր՝ Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է», ևն): Ն-ին հավասարապես մատչելի էին ողբերգ., դրամատիկ., կատակերգ., գրոտեսկ. դերերը: Նկարահանվել է կինոյում («Նամուս», 1925, «Պեպո», 1935, «Զանգեզուր», 1938, «Պատվի համար», 1956, «Ինչո՞ւ է աղմկում գետը», 1958, «Տժվժիկ», 1961, բոլորը՝ Հայֆիլմ, ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1941):

ՆԵՐՍԻՍՅԱՆ Մարտին Սահակի (1926–1996), դիրիժոր: ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1970): 1959–65-ին՝ Մինսկի սիմֆ. նվագախմբի դիրիժոր, 1965–70-ին՝ Սարատովի սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր, 1970–82-ին՝ ԽՍՀՄ պետ. կինոյի սիմֆ. նվագախմբի դիրիժոր, 1982–86-ին՝ գլխ. դիրիժոր: 1986–87-ին՝ Հայաստանի պետ. ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխ. դիրիժոր: Կահիրեում հիմնադրել է ազգ. սիմֆ. նվագախումբ (1974):

ՆԵՐՍԻՍՅԱՆ Մկրտիչ Գեղամի (1910–1999), պատմաբան: ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1950): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961):1950–62-ին՝ ՀԽՍՀ ԳԱ փոխնախագահ, 1962–66-ին՝ ՀԽՍՀ ԳԱ հաս. գիտ-յունների բաժանմունքի ակադ. քարտուղար, 1966–77-ին՝ ԵՊՀ ռեկտոր, 1977–99-ին՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստ-ի բաժնի վարիչ: Նրա նախաձեռնությամբ 1958-ին հիմնադրվել է «Պատմա-բանասիրական հանդես»-ը, որի ցկյանս խմբ-ն էր, 1967-ին՝ «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսը: Կազմել և խմբագրել է (Ռ. Գ. Սահակյանի հետ) «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» (1991) փաստաթղթերի և նյութերի ժող-ը: Աշխ-ները վերաբերում են հայ-ռուս. հարաբերություններին, հայ ազգ-ազատագր. պայքարին:

Լենինի (1970), ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (1953), Ժողդ-ների բարեկամության (1988) շքանշաններ, ԵՊՀ ոսկե (1950), ՀՀ «Մովսես Խորենացի» (1995) մեդալներ:

ՆԵՐՍԻՍՅԱՆ Պետրոս Սմբուկի (ծ. 1927), գյուղատնտես-ախտաբան: Գղտ. գիտ. դ-ր (1983): Աշխ-ները վերաբերում են բույսերի հիբրիդ. ճնշվածության, նեկրոզի, քլորոզների և գաճաճության գենային օրինաչափությունների հաստատման հիմնահարցերին:

ՆԵՐՍԻՍՅԱՆ Սերգեյ Ռուբենի (1924–1992), ճարտ.: ՀՀ վաստ. ճարտ. (1971): Համահեղինակ է Երևանում՝ Գրապալատի համալիրի (1960), ճոպանուղու (1967), մետրոպոլիտենի «Սասունցի Դավիթ» կայարանի (1980) և այլ նախագծերի, հուշարձանների չափագրությունների:

ՆԵՐՍԻՍՅԱՆ Սլավա Երվանդի (1946–2008), անասնաբույժ: Անասնաբուժ. գիտ. դ-ր (1996): Աշխ-ները վերաբերում են գղտ. կենդանիների դարաւղի և հատուկ վտանգավոր հիվանդությունների առաջացման, կանխարգելման և բուժման եղանակներին:

ՆԵՐՍԻՍՅԱՆ (Ներսեսյան) Ստեփանոս Հակոբի (1815–1884), նկարիչ: Հեղինակ է պատմ. ու կենցաղ. պատկերների («Խնջույք Քուռ գետի ափին», 1860-ական թթ.), դիմանկարների (Ա. Տեր-Ղուկասյանի, Գ. Ակիմյանի, իշխան Բ. Հ. Բեյբութովի, Գ. Իզմիթյանի, Մեսրոպ Սաշտոցի, Սահակ Պարթևի ևն), բնանկարների: Ն. իր ստեղծագործությամբ ավարտին է հասցրել XVII–XVIII դդ-ի հայ կերպարվ-ի զարգացումը:

ՆԵՐՍԻՍՅԱՆ Վալենտինա Մկրտչի (1924–2009), արյունաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1986), պրոֆ. (1996): 1968-ին Մոսկվայի արյունաբանության ինստ-ի հետ առաջին անգամ (ԽՍՀՄ-ում) ստացել է հակառեզուս-իմունոգլոբուլին, որը հնարավորություն է տալիս ռեզուս անհամատեղելիության պայմաններում ծննդաբերելու առողջ երեխա: Բացահայտել է հայկ. պոպուլացիայում բնածին նախատրամադրվածությունն արյան և ուռուցք., ռևմատիկ, նյարդ., սրտի իշեմիկ, պարբեր. և այլ հիվանդությունների հանդեպ: ՌԴՆԳԱ անդամ (1999):

ՆԵՐՍԻՍՅԱՆ Վարագ Սենիկի (1937–2012), գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (2009): Հեղինակ է «Հայ միջնադարյան տաղերգության գեղարվեստական միջոցները» (1976), «Հայ միջնադարյան տաղերգության ժանրերն ու տաղաչափությունը» (2008) մենագրությունների:

ՆԵՐՍԻՍՅԱՆ Տիգրան Բարկենի (ծ. 1966), դերասան: ՀՀ վաստ. արտիստ (2004): Բարկեն ***Ներսիսյանի*** որդին, Նելլի ***Խերանյանի*** ամուսինը: 1986–92-ին և 1995-ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ., 1992–94-ին՝ Համազգ., «Միեր Մկրտչյան» արտիստ. թատրոնների դերասան (Ջոնի՝ Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է», Ռոմեո, Ռիչարդ՝ Վ. Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ», «Ռիչարդ Երրորդ», Թեհլերյան, Արշակ թագավոր՝ Պ. Զեյթունցյանի «Ոտքի, դատարանն է գալիս», «Արշակ թագավոր», Կալիգուլա՝ Ա. Քամյուի «Կալիգուլա», Աբեղա՝ Լ. Շանթի «Հին աստվածներ», Պեպո՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», ևն): Նկարահանվել է «Պատանդներ» (1991), «Արցախյան անավարտ օրագիր» (1992), «Վերջնագիծ» (1993), «Սպանված աղավնի», «Մի նայիր հայելուն» (վերջին երկուսը՝ 2009) ֆիլմերում:

ՀԹԳՄ «Արտավազդ» (2001, 2017), «Վահագն» (2002) մրց-ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» (2013), ՄՆ (2002), ՄՆ (2017), ՀԹԳՄ (2017) ոսկե մեդալներ:

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԴՊՐՈՑ, հիմնադրվել է 1824-ին Թիֆլիսում՝ ***Ներսես Ե Աշտարակեցու*** նախաձեռնությամբ: Ունեցել է 3 դասարան, հաջորդ 2 տարում բացվել են 4-րդ և 5-րդ դասարանները: Տեսուչներ են եղել Հարություն ***Ալամդարյանը*** (1824–30, դպրոցի ամենաբեղուն շրջանն է եղել և կոչվել է «դար Ալամդարյանի»), Գաբրիել ***Պապկանյանը*** (1850–52, բացվել է գիշերօթիկ բաժին), Պետրոս ***Շանշյանը*** (1852–57), Ստեփանոս ***Նազարյանը*** (1869–71), Սեդրակ ***Մանդինյանը*** (1874–79, բացվել են 6-րդ և 7-րդ մասնագիտ. մանկավարժ. դասարանները) և ուր.: 1906–07 ուս. տարում ուներ 1071 աշակերտ: 1925-ից կոչվել է աշխատանք. դպրոց: Ն. դ-ի շրջանավարտներ են հայ գրկ-յան, մշակույթի, պետ. հանրահայտ մի շարք գործիչներ:

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՏՊԱՐԱՆ, հիմնադրել է ***Ներսես Ե Աշտարակեցին*** 1823-ին Թիֆլիսում: 1824–30-ին տպարանի աշխ-ները ղեկավարել է դպրոցի տեսուչ Հարություն ***Ալամդարյանը***: Ն. դ. տ-ում տպագրվել է ավելի քան 40 անուն գիրք (կրոն., պատմագիտ., գեղ. գրկ., բառարաններ, դասագրքեր ևն): Գործել է մինչև 1860-ական թթ-ի վերջը:

ՆԵՐՍԻՍՅԱՆՑ Վահրամ Վրույրի (ծ. 1940), տնտեսագետ: ԵՊՏԻ պատվ. դ-ր (1995): 1970–90-ին աջակցել է Հյուսիսամերիկ. ազատ առևտրի գոտու ստեղծմանը: ՀՀ-ում նպաստել է անցում. շրջանի բարեփոխումներին և զարգացման խնդիրների լուծմանը: 1995-ին ՀՀ-ում հիմնել է Համաշխ. բանկի ներկայացուցչություն, որի արտակարգ և լիազոր ներկայացուցիչն էր մինչև 1998-ը: 1998–2010-ին՝ ՀՀ նախագահի գլխ. խորհրդական, 2010-ից՝ Համահայկ. բանկի խորհրդի նախագահ և գլխ. գործադիր տնօրեն:

ՀՀ «Մեսրոպ Մաշտոց» շքանշան (2009):

ՆԵՐՍԻՏԵՆԻ, Էնդոկարդ (< *Էնդո...* և հուն.՝ kardia – սիրտ), սրտի խոռոչները ծածկող ներքին թաղանթը: Ն-ու ծալքերից ձևավորվում են սրտի փականները:

ՆԵՐՍԻՏԵՆՈՒ ԲՈՐԲՈՔՈՒՄ, Էնդոկարդիտ, ***ներսրտենու*** բորբոք. հիվանդություն՝ առավելապես սրտի փականների ախտահարմամբ և սրտի արատի առաջացմամբ:

ՆԵՐՎԱԼ (Nerval) Ժերար դը (Լաբրունի, 1808–1855), ֆրանսիացի գրող: Հեղինակ է «Փոքրիկ ներբողներ» (1830–35), «Պատրանքներ» (1854) սոնետների, «Կրակի դուստրերը» (1854) վիպակների, «Պայծառատեսները» (1852) ակնարկների ժող-ների, «Ավրելիա կամ Երազանք և կյանք» (1855) ինքնակենսագր. ողբերգ. նովելի և այլ գործերի: Ինքնասպան է եղել: Հայ. հրատարակվել են «Օրելիա: Պանդորա» (2014), «Սիլվի Վալուայի հիշողություններ» (2016) գործերը:

ՆԵՐՎԻ (Nervi) Պիեռ Լուիջի (1891–1979), իտալացի ճարտարագետ և ճարտ.: Հայտնագործել է արմոցեմենտը (մանր երկաթալարերից հյուսված կամ եռակցված ցանցերով ամրանացված մանրահատիկ կառուցվածքով բետոն): Շինանյութերի և կառուցվածքների փորձարար. հետազոտությունները համակցել է գեղ. արտահայտչականության նոր միջոցների փնտրումների հետ (ՅՈՒՆԵՍԿՕ-ի շենքը՝ Փարիզում, 1952–58, համահեղ., Աշխ-ի պալատը՝ Տուրինում,1961):

ՆԵՐՎԻԶՄ, ուղղություն ֆիզիոլոգիայում, որն ընդունում է մարդու և կենդանիների օրգանիզմներում կենսընթացների և ֆունկցիաների կարգավորման մեխանիզմներում ԿՆՀ-ի գերակա դերը: Որպես տեսություն՝ ձևավորվել է ռուս գիտնականներ Ի. Մ. Սեչենովի, Ս. Պ. Բոտկինի և գլխավորապես Ի. Պ. Պավլովի (1883-ին ֆիզիոլոգիայում ներմուծել է «Ն.» հասկացությունը) աշխ-ների հիման վրա:

ՆԵՐՈՒ Մոթիլալ (1861–1931), Հնդ. ազգ. կոնգրեսի և սվարաջականների կուս-յան առաջնորդներից, «սվարաջա» («ինքնավարություն») կարգախոսի պաշտպաններից: Ջ. ***Ներուի*** հայրը:

ՆԵՐՈՒ Ջավահառլալ (1889–1964), Հնդկաստանի Հանրապետության վարչապետ և ԱԳ նախարար՝ 1947-ից: Մ. ***Ներուի*** որդին: Ազգ-ազատագր. պայքարում Մ. ***Գանդիի*** զինակիցը, Հնդկ. ազգ. կոնգրեսի առաջնորդներից: Գաղութային Հնդկաստանում (մինչև 1947-ը) հետապնդվել է, 10 տարուց ավելի անցկացրել

է բանտերում: Պատմության մեջ մնացել է որպես «նոր Հադկաստանի կառուցող»:


ՆԵՐՈՒԴԱ (Neruda) Յան (1834–1891), չեխ գրող: Հեղինակ է «Բանաստեղծությունների գրքեր» (1868), «Բալլադներ և ռոմանսներ» (1883), «Ավագ ուրբաթի երգեր» (1896) և այլ բանաստեղծությունների, «Տարբեր մարդիկ» (1871) և այլ պատմվածքների ժող–ների:

ՆԵՐՈՒԴԱ Պաբլո (Նեֆտալի Ռիկարդո Ռեյես Բասոալտո, 1904–1973), չիլիացի բանաստեղծ: 1949–52–ին՝ վտարանդի: Հեղինակ է «Քսան բանաստեղծություն սիրո մասին և մեկ երգ հիասթափության» (1924), «Բնակության վայրը՝ երկիր» (հ. 1, 2, 1933, 1935), «Իսպանիան իմ սրտում» (1937), «Ներբողներ նախասկզբնական իրերին» (1954–57) բանաստեղծությունների, «Թող զարթնի անտառահատը» (հայ.՝ 1952) պոեմների ժող–ների, Լատ. Ամերիկայի ճակատագրի մասին «Համընդհանուր երգ» (1950) քնարաէպիկ. դյուցազներգության, «Սև կղզու հուշամատյանը» (հ. 1–5, 1964) ինքնակենսագր. պոեմի, «Խոստովանում եմ՝ ես ապրել եմ» (1974) հուշագրության և այլ գործերի:

Չիլիի Ազգ. (1945), Լենինյան միջազգ. (1953), Նոբելյան (1971) մրց–ներ:

ՆԵՐՔԻՆ ԱԿԱՆՋ, մարդու և ողնաշարավոր կենդանիների աճառային կամ ոսկրային լաբիրինթոսի՝ հեղուկով լցված խողովակիկների ու խոռոչների հաղորդակցվող համակարգ:

ՆԵՐՔԻՆ ԱՅՐՄԱՆ ՇԱՐԺԻՉ (նաշ), ջերմ. շարժիչ, որի աշխ. խոռոչում այրվող վառելանյութի քիմ. էներգիայի մի մասը փոխարկվում է մեխ. էներգիայի: Ըստ վառելանյութի տեսակի՝ լինում են հեղուկ. և գազ., ըստ աշխ. ցիկլի՝ անընդհատ գործողության, 2 և 4 տակտերով, ըստ այրվող խառնուրդի պատրաստման եղանակի՝ արտաքին (օր.՝ կարբյուրատոր.) և ներքին (օր՝ դիզելներ) խառնուրդագոյացմամբ, ըստ էներգիայի ձևափոխման տեսակի՝ մխոց., տուրբին., ռեակտիվ. և համակցված: Օգգ՝ 0,4–0,5: Առաջին նաշ–ը նախագծել է բելգիացի գյուտարար Է. Լենուարը (1820–1900) 1860–ին:



Ներքին այրման քառափակտ կարբյուրատորային շարժիչի աշխատանքի սխեման (աշխատանքային ցիկլը). ա. I փակտ (ներթողում), բ. II փակտ (սեղմում), գ. III փակտ (աշխատանքային քայլ), դ. IV փակտ (արտաթողում)

«ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ», ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի մշտ. հանձնաժողով: Նպատակը «կործանիչ և հակաամերիկյան քարոզչության» տարածման դեմ պայքարելն է: Ստեղծվել է 1934–ին, մինչև 1969–ը՝ «Հակաամերիկյան գործունեության հետաքննության հանձնաժողով»: 1938–ին ստացել է ժամանակավոր, 1946–ին՝ մշտ. հանձնաժողովի կարգավիճակ:

ՆԵՐՔԻՆ ՋՈՐՔԵՐ ՀՀ ՆԳՆ, 2005–ից՝ ՀՀ Կառ–յանն առընթեր ոստիկանության զորքեր, ստեղծվել են 1992–ին: Աջակցում են ոստիկանության մարմիններին հաս. կարգի պահպանման՝ արտակարգ դրության իրավ. ռեժիմի և հաս. անվտանգության ապահովման գործում:

ՆԵՐՔԻՆ ԷՆԵՐԳԻԱ մարմնի, մարմնի մոլ–ների և նրանց կառուցվածք. միավորների (ատոմներ, էլեկտրոններ, միջուկներ) կինետիկ էներգիաների, մոլ–ներում ատոմների փոխազդեցությունների և այլ էներգիաների գումարը: Ն. է–ի մեջ չեն մտնում մարմնի՝ որպես ամբողջության, շարժման էներգիան և որևէ ուժ. դաշտում (գրավիտացիոն, մագնիս.) մարմնի ունեցած պոտենցիալ էներգիան:

ՆԵՐՔԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, արյան շրջանառության, շնչառության, մարսողության օրգանների, երիկամների, նյութափոխանակության, շարակցական հյուսվածքի և արյան համակարգի հիվանդությունները, որոնց բուժումն իրականացնում են բժիշկ–թերապևտները: Նույն անվանումն է կրում նաև այդ հիվանդություններն ուսումնասիրող հիմն. կլինիկ. գիտ–յունը (տես *Թերապիա*):

ՆԵՐՔԻՆ ՃԱՊՈՆԱԿԱՆ ԾՈՎ, Սետո *Նայկայ*, ծով Ճապոնիայի Հոնսյու, Կյուսյու և Սիկոկու կղզիների նեղուցների միջև: Խաղաղ օվկ–ի հետ կապված է Կիի և Բունգո, Ճապոն. ծովի հետ՝ Սիմոնոսեկի նեղուցներով: Մակերեսը՝ 18 հզ. *կմ*^{2}: Առլզն խոր.՝ 74 *մ*: Գլխ. նվիճգստ–ները՝ Կոբե, Օսակա, Մոձի, Սիմոնոսեկի:

ՆԵՐՔԻՆ ՄՈՆԳՈԼԻԱ, ինքնավար շրջան Չինաստանում: Տարածքը՝ 1,2 մլն *կմ*^{2}, բն.՝ 24,7 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ *Հուհհոտո*:

ՆԵՐՔԻՆ ՇՔՈՒՄ, 1. պինդ մարմինների դեֆորմացիայից ստացվող մեխ. էներգիան անդարձելիորեն ջերմության փոխարկելու հատկությունը: Ն. շ. ի հայտ է գալիս, օր., ազատ տատանումների մարումներում: 2. Հեղուկներում և գազերում նույնն է, ինչ *մածուցիկությունը*:

ՆԵՐՔԻՆ ՕԱՔՍՈՆԻԱ (Niedersachsen), երկրամաս Գերմանիայի հս–ում: Տարածքը՝ 47,4 հզ. *կմ*^{2}, բն.՝ 7,8 մլն (2013):

ՆԵՐՔԻՆ ՏԱՎՐՈՍ, լեռն. համակարգ Հայկ. լ–աշխարհում. Կենտր. Տավրոսի Ուզունյայլա սարահարթից փնջաձև տարածվում է արլ.: Ջրբաժան է Արաքս, Արմ. Եփրատ, Գայլ (Կելկիտ), Ճորոխ գետերի միջև: Մակերևույթը մասնատված է խոր, կարմ գետահովիտներով: Ն. Տ–ի կենտր. մասը Մնձուր, Մերջան, Այծպտկունք, Հայկ. Պար լ–շղթաներով ձգվում է մինչև Մասիս լ–զանգվածը, հս–արլ. լ–ճյուղը՝ Սիվրի, Մեծրաց, Կարմիր Փորակ լ–շղթաներով՝ մինչև Կուրի ակունքները, հվ–արլ–ը Խամուր, Կազրել և այլ լ–շղթաներով հասնում է Սիփան լ–զանգված: Կան շինանյութերի, երկաթի, նավթի, ծծմբի, բազմամետաղ. կերակրի աղի հանքավայրեր, հանք. ջրերի աղբյուրներ: Լանդշաֆտը լ–տափաստանային է, բարձրադիր գոտում՝ լ–մարգագետնային:

ՆԵՐՔԻՆԻ, կանանոցի (հարեմ) հսկիչ, ամորձատված, սեռ. կարողությունից զրկված տղամարդ: Արքունի ներքինապետը (միջնադար. Հայաստանում՝ նաև մարդպետ, վերապահված էր Մարդպետների տոհմին) միաժամանակ պալատի կառավարիչն էր, արքայի խորհրդատուն, արքունի գանձապահը, կալվածքների ու բերդերի հսկիչը: Ն–ներ պահելու սովորությունը տարածված էր Հայաստանում, Ասորեստանում, Պարսկաստանում և այլուր:

ՆԵՐՔՆԱՁԻԳ, ուղղանկյուն եռանկյան ուղիղ անկյան դիմացի կողմը: Ուղղանկյուն եռանկյան ամենամեծ կողմն է:

ՆԵՈՒՅՄԻՆ Գրիգորի Նիկոլաևիչ (1886–1946), ռուս. աստղագետ: Աշխ–ները վերաբերում են աստղալուսանկարչությանը: Հայտնաբերել է 63 փոքր մոլորակներ և 6 գիսավոր:

ՆԵՈՒՍՏՐՈՒԵՎ Սերգեյ Սեմյոնովիչ (1874–1928), ռուս հողագետ և ֆիզիկաաշխարհագետ: Ղեկավարել է Ռուսաստանում հողերի աշխարհագրության առաջին ամբիոնը Լենինգրադի պետ. համալսարանում: Առաջարկել է «գորշահող» տերմինը և սահմանել է անապատներում հողառաջացման գորշահող. տիպը:

ՆԵՈՒՔԵՆ (Neuquen), 1. պրովինցիա Արգենտինայի արմ–ում: Տարածքը՝ 94,1 հզ. *կմ*^{2}, բն.՝ 551 հզ. (2010): Վարչ. կենտրոնը՝ *Նեուքեն*: 2. Ք. Արգենտինայում, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը, նվիճգստ Նեուքեն և Լիմայ գետերի միախառնման վայրում: Բն.՝ 232 հզ. (2010):

ՆԵՔԱՄԱՏ, XV դ–ի ճարտ.: 1439–43–ին Մկրտիչ Նաղաշի հետ վերակառուցել է Ամիդի (Դիարբեքիր) Սբ Թեոդորոս եկեղեցին: Մոլեռանդ մահմեդականները քանդել են գմբեթը, քանի որ այն բարձր էր քաղաքի մինարեթներից: Չափավոր բարձրությամբ վերականգնել են Ն. և Մկրտիչ Նաղաշը 1447–ին:

ՆԵՖ (Neff) Վլադիմիր (1909–1983), չեխ գրող: Հեղինակ է «Հաշվենկատ ամուսնություններ» (1957), «Կայսերական մանուշակներ» (1958), «Վատ արյուն» (1959), «Ուրախ այրին» (1861), «Թագավորի կառապանը» (1963) պատմ. վեպ–ինգագրության, «Թագուհիները ոտքեր չեն ունենում» (1973), «Չքնաղ կախարդուհին» (1980) պատմ. վիպաշարերի:

ՆԵՖԵԼԻՆ, սիլիկատների խմբի միներալ՝ $KNa_3[AlSiO_4]_4$: Կարծր.՝ 5,5–6, խտ.՝ 2,6 *գ/սմ*^{3}: Անգույն է, սպիտակ, գորշ, կանաչավուն, մսի կարմիր: ՀՀ–ում հարուստ կուտակումներ կան Փամբակում: Օգտագործվում է որպես ալյումինի հումք և սոդա, սիլիկագել ստանալու համար, ինչպես նաև գաղտ–յան մեջ՝ որպես պարարտանյութ:

ՆԵՖԵԼԻՆԱՅԻՆ ՄԻՆԵՐԻՏ, ներժայթուք հիմք. ապար՝ կազմված ալվալային դաշտ. սպաթներից (65–70 %), *նեֆելին* (շուրջ 20 %), էգիրին–ավգիտ, ամֆիբոլ, բիոտիտ և այլ միներալներից: Կառուցվածքը բյուրեղային է, պորփյուրանման: Սպիտակ է, բաց մոխրագույն: ՀՀ–ում հայտնի են խոշոր գոյացումներ՝ Թեժ լ–ան զանգվածում, Սյունիքի (Շվանիձոր գ.) և Արարատի (Փոքր Վեդի գ.) մարզերում: Ալյումինի հումք է, կարելի է ստանալ նաև բարձրորակ ցեմենտ:

ՆԵՖԵՐՏԻՏԻ (հին եգիպտ. – «Գեղեցկուհին կգա»), Եգիպտոսի թագուհի՝ մ. թ. ա. XV դ–ի վերջ–XIV դ–ի սկզբին: *Ամենհոթեպ IV*–ի (Էխնաթոն) կինը: 1912–ին Էլ–Ամառնայում հայտնաբերվել են քանդ. *Թութմեսի* կերտած Ն–ի դիմաքանդակները (պահպանվում են Կահիրեի և Բեռլինի թանգարաններում):

ՆԵՖՅՈԴՈՎ Վադիմ Իվանովիչ (1937–2008), ռուս քիմիկոս: ՌԳԱ ակադ. (2003, թղթ. անդամ՝ 1994–ից): Աշխ–ները վերաբերում են անօրգ. նյութերի և միացությունների կառուցվածքների ուսումնասիրմանը ռենտգենասպեկտր. եղանակներով, մակերևույթի ֆիզքիմ. հետազոտություններին:

ԽՍՀՄ (1985), ՌԽՖՍՀ (1989) Պետ. մրց–ներ:

ՆԵՖՅՈՎ, Օլեգ Մատվեևիչ (ծ. 1931), ռուս քիմիկոս: ՌԳԱ ակադ. (1987, թղթ. անդամ՝ 1974–ից), փոխնախագահ (1988–2001): Մի քանի քիմ. ամսագրերի գլխ. խմբ.: Աշխ–ները վերաբերում են կարբենների, ազատ ռադիկալների և այլ միջանկյալ մասնիկների, փոքր ցիկլերի կառուցվածքի ու ռեակցիոնունակության հարցերին, նպատակային օրգ. սինթեզում դրանց օգտագործմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1983, 1990):

ՆԵՖՐԻԴԻՈՒՄՆԵՐ (< հուն. nephros – երիկամ), անողնաշար կենդանիների արտաթորության օրգաններ (պրոտոնեֆրիդիումներ և մետանեֆրիդիումներ): Մասնակցում են օսմոկարգավորմանը, օրգանիզմի փոխանակային նյութերի կորզմանն ու հեռացմանը, երբեմն՝ սեռ. նյութերի արտազատմանը:

ՆԵՖՐԻՏ, ամֆիբոլների խմբի միներալների՝ ակտինոլիտի և տրեմոլիտի տարատեսակ: Հոծ, մածուցիկ սպիտակ և կանաչ կիսաթափանցիկ զանգվածներ են: Կարծր.՝ 5,5–6,5, խտ.՝ *3 գ/սմ³:* Դեկորատիվ քար է:

ՆԵՖՐԻՏ, տես *Երիկամաբորբ*:

ՆԵՖՐՈԼԻԹԻԱԶ, տես *Երիկամաքարային հիվանդություն*:

ՆԵՖՐՈԼՈԳԻԱ, տես *Երիկամաբանություն*:

ՆԵՖՐՈՆ (հուն.՝ nephros – երիկամ), ողնաշարավոր կենդանիների և մարդու երիկամի կառուցվածք. ֆունկցիոնալ միավորը:

ՆԵՖՐՈՊԱԹԻԱ (< հուն. nephros – երիկամ և *...պաթիա*), երիկամների տարբեր հիվանդությունների խմբի համալրական անվանումը, օր.՝ Ն. կարծրամաշկության ժամանակ, Ն. տեղաճարակային («բալկանյան») ևն: Հղի կանանց Ն. (հղիության ուշ տոքսիկոզ) բնորոշվում է այտուցներով, մեզում սպիտակուցների առկայությամբ, զարկերակ. ճնշման բարձրացմամբ: Նման դեպքերում անհրաժեշտ է անհապաղ հոսպիտալացում:

ՆԵՖՐՈՍԿԼԵՐՈԶ (< հուն. nephros – երիկամ և *սկլերոզ*), երիկամներում շարակցական հյուսվածքի աճումը (հաճախ՝ «կնճռոտ երիկամի» առաջացմամբ) հիպերտոնիկ հիվանդության ուշ փուլերում և *երիկամաբորբի* դեպքում:

ՆԶՈՎՔ, **բանադրանք**, 1. եկեղեցու սահմանած բարձրագույն պատիժ, արգելք՝ ուղղափառ դավանանքի և ուսուցման դեմ մեղանչողների համար, որով զրկում են եկեղեցու հաղորդակցությունից: 2. Ծայրահեղ և անբեկանելի պարսավանք, զայրույթի, լարվածության ծայրաստիճան դրսևորում:

ՆԺԴԵՀ Գարեգին (Տեր–Հարությունյան Գարեգին Եղիշեի, 1886–1955), ռազմ., քաղ. և պետ. գործիչ, հրապարակախոս, փիլ., գնդ.: 1912–ին *Անդրանիկի* հետ Բուլղարիայում կազմակերպել է հայկ. կամավոր. վաշտ (270 զինվոր), որը բուլղ. բանակի շարքերում 1913–ին կռվել է Թուրքիայի դեմ: 1918–ին մասնակցել է *Դարաքիլիսայի ճակատամարտին*: 1919–ի օգոստ–ից՝ Զանգեզուրում ԶՈՒԻ հրամ.: 1920–ի հոկտ. 10–ին Ն–ի գլխավորությամբ սկսվել է համազանգեզուրյան ապստամբությունը: 1920–ի դեկտ. 25–ին ընտրվել է «Ինքնավար Սյունիքի» (Լեռնահայաստանի Հանրապետություն) սպարապետ՝ դիկտատորի լիազորություններով: 1921–ի հուլիսին Զանգեզուրից անցել է Պարսկաստան, այնտեղից՝ Սոֆիա: 1932–34–ին բնակվել է ԱՄՆ–ում, որտեղ հիմնադրել է *Ցեղակրոն շարժումը*: 1937–ին Պլովդիվում Հայկ *Ասատրյանի* հետ հրատարակել է «Ռազմիկ» ազգ. թերթը: ԵՀՊ–ի ժամանակ մասնակցել է գերմ. բանակում հայկ. ազգ. լեգեոն կազմավորելու գործին: Երբ խորհրդ. բանակը մտել է Բուլղարիա (1944), Ն. ձերբակալվել է, տեղափոխվել Մոսկվա: Երևանում դատապարտվել է 25 տարվա բանտարկության: 1948–ին Երևանից տեղափոխել են Վլադիմիր ք–ի բանտ, որտեղ և մահացել է: 1983–ին աճյունը գաղտնի բերվել է Հայաստան. ամփոփվել է Սպիտակավոր Սբ Աստվածածին վանքում (ՀՀ Վայոց ձորի մարզի Վերնաշեն գ–ի մոտ): Ն–ի կտակի համաձայն՝ մի փոքր մասունք 1986–ին ամփոփվել է Խուստուփ լ–ան լանջին: Աշխ–ները վերաբերում են ցեղակրոն (մաքրակրոն) հայի կերպարի ու վարքագծի փիլ–յանը: Լույս են տեսել «Հատընտիրը» (2001), «Երկերը» (հ. 1–2, 2002), «Նամականին» (2002) ևն: Բուլղարիայի թագավորության «Արիություն» (1912), Ռուս. կայսրության «Սբ Վլադիմիր» 3–րդ (1915, 1918), «Սբ Աննա» 4–րդ (1915) աստիճանների, «Սբ Գևորգի խաչ» 3–րդ և 2–րդ կարգերի (1916), Հայաստանի առաջին հանրապետության «Մեծն Վարդան» (1919) և Լեռնահայաստանի «Խուստուփի արծիվ» (1921) շքանշաններ:

ՆԻԱԳԱՐԱ, (Niagara), գետ Հս. Ամերիկայում՝ ԱՄՆ–ի և Կանադայի սահմանին: Երկ.՝ 54 *կմ*, ավազանը՝ 665 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 5,9 հզ. *մ³/վ*: Սկիզբ է առնում Էրի լճից և թափվում Օնտարիո լիճը: Գոյացնում է համանուն ջրվեժը, որը շրջանցելու համար կառուցվել է Ուելենդ ջրանցքը:

ՆԻԱԳԱՐԱՅԻ ՋՐՎԵԺ (Niagara Falls, հավանաբար իրոկեզերեն՝ նիակարե – մեծ աղմուկ), Հս. Ամերիկայում՝ *Նիագարա* գետի վրա: Այծի կղզիով բաժանվում է 2 մասի՝ ձախակողմյան՝ կանադ. (լայն.՝ 800 *մ*, բարձր.՝ 48 *մ*, անցնում է ջրի ծախսի մոտ 95 %–ը), և աջակողմյան՝ ամերիկ. (լայն.՝ 300 *մ*, բարձր.՝ 51 *մ*, ջրի միջին ծախսը՝ 5,9 հզ. *մ³/վ*): Կան ջրէկներ: Զարգացած է զբոսաշրջությունը:

ՆԻԱՄԵՅ (Niamey), Նիգերի Հանրապետության մայրաքաղաքը (1960–ից), համանուն դեպարտամենտի վարչ. և երկրի քաղ., տնտ., մշակութ. ու առևտր. կենտրոնը՝ Նիգեր գետի ափին: Բն.՝ 980 հզ. (2010): Նվինգստ է, տրանսպորտ. կենտրոն: Զարգացած է արհեստագործությունը: Ունի միջազգ. օդանավակայան, համալսարան (1973–ից), գիտ. հիմնարկներ, Ազգ. թանգարան, գրադարան ևն: Հիմնադրվել է ձկնորս. գյուղի տեղում: 1926–60–ին՝ Նիգեր ֆրանս. տիրույթի վարչ. կենտրոնը:

ՆԻԱՍ (Nias), կղզի Հնդ. օվկ–ում՝ Սումատրա կղզու արմ–ում (Ինդոնեզիա): Տարածքը՝ շուրջ 4000 *կմ²*: Բարձր.՝ մինչև 886 *մ*:

ՆԻԲԵԼՈՒՆԳՆԵՐ, առասպել. հերոսներ, որոնք տիրապետել են գանձի, որի համար մղվող պայքարի պատմությունն է գերմ. էպոսի (*«Նիբելունգների երգը»*) հիմքում:

«ՆԻԲԵԼՈՒՆԳՆԵՐԻ ԵՐԳԸ» («Das Nibelungenlied»), գերմ. հերոս. վիպերգ (մոտ 1200–ին, 1–ին հրտ.՝ 1757, հայ.՝ 1925): «Ն. և.»–ում արտացոլվել են 436–ին հոնների՝ բուրգունդ. պետության ոչնչացման մասին պատմ. ավանդությունները: Վիպերգի սյուժեից օգտվել են Ֆ. Ֆուկեն, Ֆ. Հեբբելը, Ռ. Վագները և ուր.:

ՆԻԳ, **Նիգատուն**, գվո *Այրարատ* նահանգում՝ Քասաղ և Հրազդան գետերի վերին հոսանքների շրջաններում: Համապատասխանում է հիմնականում ՀՀ Արագածոտնի մարզի հս., մասամբ՝ Կոտայքի մարզի արմ. տարածքներին: Կենտրոնն էր Քասախ (այժմ՝ ք. Ապարան) ավանը: Եղել է արքունի տիրույթ. IV դ–ից անցել է Գնթունիների նախարար. տանը, այնուհետև՝ Պահլավունի իշխան. տոհմին, ավելի ուշ՝ Վաչուտյաններին ու Պռոշյաններին: Ն–ում է տեղի ունեցել *Ձկնավաճառի ճակատամարտը* (910):

ՆԻԳԱՄԱՄ, լ–գագաթ Արագածի հս–արլ. լանջին՝ ՀՀ Արագածոտնի մարզում: Բարձր.՝ 3424 *մ*: Լանջաֆտը լ–մարգագետնային է:

ՆԻԳԵՐ (Niger, < բերբերերեն նեգիրեն – գետ), գետ Արմ. Աֆրիկայում՝ Մալի, Նիգեր, Նիգերիա պետությունների տարածքում: Երկ–յամբ (4160 *կմ*) և ավազանի մեծությամբ (2092 հզ. *կմ²*) երրորդն է Աֆրիկայում (Նեղոսից և Կոնգոյից հետո): Ջոլիբա անվամբ սկիզբ է առնում Լեռնա–Լիբեր. բարձունքից և, առաջացնելով 24 հզ. *կմ²* տարածքով դելտա, թափվում է Ատլանտ. օվկ–ի Գվինեական ծոցը: Գլխ. վտակը՝ Բենուե: Ունի անձրև. սնում: Ձրի տարեկան միջին ծախսը՝ 9300 *մ³/վ* (վարարելիս՝ մինչև 30–35 հզ. *մ³/վ*): Ձրերը ոռոգման նպատակով օգտագործելու համար կառուցվել են ամբարտակներ: Նավարկելի է առանձին հատվածներում: Հարուստ է ձկներով: Ափերին են Կուրուսա, Բամակո, Թոմբուկթու ք–ները, դելտայում՝ Պորտ Հարքորտ նվինգստ–ը:

ՆԻԳԵՐ, **Նիգերի Հանրապետություն** (République du Niger), պետություն Արմ. Աֆրիկայում: Սահմանակից է Ալժիրին, Լիբիային, Չադին, Բենինին, Նիգերիային, Բուրկինա Ֆասոյին և Մալիին: Տարածքը՝ 1267 հզ. *կմ²*, բն.՝ 23,5 մլն (2015): Մայրաքաղաքը՝ *Նիամեյ*: Պետ. լեզուն՝ ֆրանս.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Բաժանված է 8 վարչ. տարածաշրջանների (այդ թվում՝ մայրաքաղաք.): Հավատացյալների մեծ մասը սուննի մահմեդական է, կան նաև քրիստոնյաներ: Անդամակցում է ՄԱԿ–ին, Աֆրիկ. միությանը, ԱռՀԿ–ին ևն: Աշխարհի ամենաաղքատ երկրներից է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 381 ԱՄՆ դոլար է (2014): Արտահանում է ուրան, հագուստ, խեկ–ներ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ աֆրիկ. ֆրանկ:

Միջին դարերում Ն–ի տարածքում գոյություն են ունեցել վաղավատ. պետություններ՝ Սոնգհայի, Կանեմ Բոռնու ևն: XIX դ–ի սկզբին հվ. շրջանները մտել են Սոկոտո պետության կազմի մեջ: 1890–ական թթ–ին Ֆրանսիան սկսել է Ն–ի զավթումը և 1904–ին ստեղծել «Նիգեր ռազմական տարածքը» Ֆրանս. Արմ. Աֆրիկայի (ՖԱԱ) մեջ մտնող Վերին Սենեգալ–Նիգեր գաղութի կազմում: Ն–ի բնակիչները բազմիցս ապստամբել են (1905, 1906–14, 1914–17) գաղութարարների դեմ: 1922–ին Ն. դարձել է առանձին վտմ: ԵՀՊ–ից հետո Ն–ում վերելք է ապրել ազգ–ազատագր.

շարժումը: 1946-ին հիմնադրվել է Ն-ի առաջադիմ. կուս-յունը (ՆԱԿ): 1947-ին Ն. ստացել է Ֆրանսիայի «անդրծովյան տարածքի», 1958-ին՝ Ֆրանս. համագործակցության անդամ պետության կարգավիճակ և հռչակվել ԻՀ: Կառ-յան գլուխ է անցել ՆԱԿ-ի ղեկ-ը: 1960-ին դուրս է եկել Ֆրանս. համագործակցությունից և հռչակվել անկախ պետություն: 1970-ական թթ-ի կեսերից երկրի քաղ. իրավիճակն անկայուն է (միջէթնիկ. հակամարտություններ): Մի քանի անգամ իշխանությունն անցել է զինվորականներին: Հերթ. ռազմ. հեղաշրջումը տեղի է ունեցել 2010-ին:

ՆԻԳԵՐԻԱ (Nigeria), **Նիգերիայի Դաշնային Հանրապետություն** (Federal Republic of Nigeria), պետություն Արմ. Աֆրիկայում: Սահմանակից է Նիգերին, Չադին, Կամերունին և Բենինին: Տարածքը՝ 923,8 հզ. *կմ*^{2}, բն. 181 մլն (2015): Մայրաքաղաքը՝ *Աբուջա*: Պետ. լեզուն՝ անգլ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը: Բաժանված է 36 վարչ. նահց-ների: Հավատացյալների շուրջ կեսը սուննի մահմեդական է, 40 %-ը՝ քրիստոնյա: Անդամակցում է ՄԱԿ-ին, Աֆրիկ. միությանը, ԱՌՀԿ-ին ևն: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 2,5 հզ. ԱՄՆ դոլար է (2014): Արտահանում է նավթ, քիմիկատներ, սննդամթերք ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ նայրա:

VIII–X դդ-ում Ն-ի հս-ում կազմավորվել են հաուսա ժողդ-ի քաղաք-պետությունները, նրանցից արլ.՝ Կանեմ Բոռնու պետությունը, հվ-ում՝ Բենին թագավորությունը: 1472-ին Ն-ի տարածքում հայտնվել են պորտուգալացիներ, 1553-ին՝ անգլիացիներ: XIX դ-ի կեսից մինչև XX դ-ի սկիզբը Մեծ Բրիտանիան գաղութացրել է Ն. (1914-ին ներկայի տարածքն անվանվել է «Ն. գաղութ և պրոտեկտորատ»): ԱՀՊ-ից սկսվել է անկախության համար պայքարը, որը ղեկավարել է 1944-ին ստեղծված Նիգերիայի և Կամերունի Ազգ. խորհուրդը (1962-ից՝ Նիգեր. քաղաքացիների ազգ. խորհուրդ): Մեծ Բրիտանիան 1947-ին Ն. բաժանել է Հս., Արմ. և Արլ. մասերի: 1958-ի հոկտ-ին Լոնդոնի սահմանադր. համաժողովում Ն-ի բոլոր շրջանները պահանջել են անկախություն: 1960-ին Ն. դարձել է անկախ պետություն, 1963-ին հռչակվել դաշն. հանրապետություն: 1966-ին տեղի է ունեցել զինվ. հեղաշրջում, Ն. հռչակվել է միացյալ պետություն, արգելվել են քաղ. կուս-յունների և կազմ-յունների գործունեությունը: Զինվ. նոր հեղաշրջումից (1966) հետո վերականգնվել է կառավարման դաշն. ձևը: Երկրի հետագա պետ. կառուցվածքը որոշելու համար (1966) Լագոսում հրավիրվել է համանիզեր. սահմանադր. համաժողով: Սակայն Հս. Ն-ում անկարգությունների և Արլ. Ն-ի ղեկավարության (վարում էր անջատող. քաղ-յուն)՝ համաժողովը բոյկոտելու հետևանքով հարցը հետաձգվել է: 1967-ին Արլ. Ն-ի ղեկավարությունը հայտարարել է անջատման և ինքնուրույն պետություն («Բիաֆրի Հանրապետություն») ստեղծելու մասին: Նույն տարում երկրում սկսվել է պատերազմ: 1970-ին անջատողականների ուժերը պարտվել են: 1975-ին զինվ. հեղաշրջմամբ իշխանության գլուխ անցած Մ. Մոհամմեդի կառ-յունը առաջ է քաշել մինչև 1979-ը գինվ. կառավարումից աստիճանաբար քաղաքացիականի անցնելու ծրագիր: Սակայն 1976-ին Մ. Մոհամմեդը սպանվել է: 1984-ին կազմավորվել է դաշն. ռազմ. կառ-յուն: 1985-ի նոր ռազմ. հեղաշրջմամբ իշխանությունն անցել է ԶՈՒ կառավարող խորհրդին: Նախագահ Ի. Բաբանգիդան հրաժարական է տվել՝ լիազորությունները փոխանցելով ժամանակավոր ազգ. կառ-յանը: 1993-ին նորից իշխանության են եկել զինվորականները: 1998-ին վերականգնվել է քաղաքաց. կառավարումը: 2000-ական թթ-ից Ն-ում տեղի են ունեցել միջկրոն. արյունահեղ բախումներ քրիստոնյաների և մահմեդականների միջև. երկրում գործում է իսլամ. «Բոկո Հարամ» ահաբեկչ. խումբը, որը հանդես է գալիս հանուն շարիաթի նորմերի արմատավորման և «Արևմուտքի ատրիբուտների» վերացման: 2015-ին նախագահ է ընտրվել Մոհամմադ Բուհարին: 2017-ից Ն. Աֆրիկայի առաջատար նավթարտադրողն է. ՀՆԱ-ի արտադր-յամբ առաջ է անցել ՀԱՀ-ից:

ՆԻԳԵՐՈ-ԿՈՆԳՈԼԵԶՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, կոնգո-կորդոֆանյան լեզուներ, կորդոֆանյան ցեղերի լեզուները (տագոյ, տումալե, էլիրի ևն), աֆրիկ. փոքր ընտանիք՝ ըստ Ջ. Գրինբերգի դասակարգման: Բաժանվում է 2 ընտանիքի՝ նիգերո-կոնգոլեզյան և կորդոֆանյան լեզուներ:

ՆԻԳԻՅԱՆ Սեմյոն Ալեքսանդրի (ծ. 1949), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1997), պրոֆ. (2000): Աշխ-ները վերաբերում են ծրագրերի սխեմաների տեսությանը, ֆունկցիոնալ և տրամաբ. ծրագրավորման հիմունքներին:

ՆԻԴԵՄ (Needham) Ջոզեֆ (1900–1995), անգլիացի կենսաքիմիկոս, սաղմնաբան և չինագետ: Հեղինակ է «Գիտությունը և քաղաքակրթությունը Չինաստանում» (հ. 1–14, 1954–90) հիմնարար մենագրությունների շարքի:

ՆԻԴԵՌԼԱՆԴԱԿԱՆ ԱՆԹԻԼՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ (նիդեռլ.՝ Niderlandse Antillen), Նիդեռլանդների նախկին (մինչև 2010-ը) տիրույթ Վեստ Ինդիայում (Արուբա, Կյուրասաո, Բոնայրե և այլ կղզիներ): Ընդհ. տարածքը՝ 961 *կմ*^{2}, բն.՝ 330 հզ. (2008): Պետ. լեզուն՝ նիդեռ.: Վարչ. կենտրոնը՝ *Վիլլեմստադ*: 1986-ին Ն. Ա. Կ-ի կազմից դուրս է եկել Արուբան՝ դառնալով ինքնակառավարվող պետություն Նիդեռլանդների կազմում: 2010-ին լուծարվել է մնացած մասը՝ բաժանվելով մի քանի ինքնակառավարվող պետությունների (Կյուրասաո և Սեն Մարտեն) և Նիդեռլանդների հատուկ համայնքների (Բոնայրե, Սաբա, Սինտ Էստատիուս):

ՆԻԴԵՌԼԱՆԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, հոլանդացիների և ֆլամանդացիների գրկ-ը նիդեռլ-ով: Ն. գ-յան հնագույն հուշարձանը Կարոլինգյան սաղմոսներն են (IX դ.): Միջնադար. ասպետ. գրկ-յան ականավոր ներկայացուցիչը Հենրիխ ֆոն Ֆելդեկեն է: XIII դ-ի 2-րդ կեսը նշանավորվել է Յ. վան Մաալանտի (մոտ 1235–1300), Յ. վան Բունդալեի (մոտ 1280–1365), Յ. դե Վերտի (ծ. թ. անհտ – մոտ 1362) բյուրգեր. ուսուցող. գրկ-յամբ: XIV դ-ի 2-րդ կեսին արևմտաեվրոպ. գրկ-յան մեջ առաջացել է աշխարհիկ դրամայի՝ արելեսպելեն ժանրը (անանուն հեղինակների «Էսմորեյտ» և «Լանսելոտ» պիեսները): Ռեդերեյկերները կամ հռետորները նպաստել են ազգ. դրամատուրգիայի և պոեզիայի ծաղկմանը: Ռեդերեյկերների ստեղծած արվ-ի տեսաբանը «Ճարտասանական արվեստ» (1548) երկի հեղինակ Մ. դե Կաստելեյնն է (1485–1550): XVI դ-ի գրկ-յան մեջ արդեն ի հայտ են եկել Վերածննդի դարաշրջանին բնորոշ տարրեր: Դրա վառ ներկայացուցիչը *Էրազմ Ռոտերդամցին* է: Ն. գ-յան մեջ Յ. վան դեր Նոտը (1540–մոտ 1595) սկզբնավորել է չափածո նոր ժանրեր և բանաստեղծ. ձևեր, Ֆ. Մառնիքս վան Սինտ Ալդեգոնդեն (1540–1598) ստեղծել է կաթոլիկ եկեղեցու դեմ ուղղված երգիծ. գործեր: Հումանիստներ Դ. Վ. Կոռնհերտը (1522–1590), Հ. Սպիգելը (1549–1612), «Նկարիչների մասին գրքի» (1604) հեղինակ Կ. վան Մանդերը (1548–1606) և ուր. նպաստել են նիդեռլ. արձակի զարգացմանը:

ՆԻԴԵՌԼԱՆԴԱԿԱՆ ԴՊՐՈՑ (ֆրանկո-ֆլամանդ., բուրգունդյան, ֆլամանդ. դպրոց), ուղղություն XV–XVI դդ-ի երաժշտության մեջ. ձևավորվել է Նիդեռլանդների պատմ. տարածքում: Նշանավորել է վոկալ-խմբերգ. պոլիֆոնիկ արվ-ի ծաղկումը (ներկայացուցիչներ՝ Դ. Դյուֆայի, Յ. Օկեգեմ, Յ. Օբրեխտ, Ժոսքեն-Դեպրե, Օ. Լասսո և ուր.): Կոմպոզիտորները հոգևոր և աշխարհիկ երկերում (մեսսաներ, մոդետներ, մադրիգալներ, բազմաձայն երգեր) լայնորեն գործածել են կոնտրապունկտի բարդ և զարգացած տեխնիկան:

ՆԻԴԵՌԼԱՆԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ գիտության և արվեստի, հիմնադրվել է 1808-ին Ամստերդամում: 2009-ին ուներ 200 ակադ., 40 թղթ. անդամ, 60 արտ. անդամ:

ՆԻԴԵՌԼԱՆԴՆԵՐ (Nederland), **Նիդեռլանդների Թագավորություն** (Koninkrijk der Nederlanden), պետություն Արմ. Եվրոպայում: Սահմանակից է Գերմանիային և Բելգիային: Տարածքը՝ 41,5 հզ. *կմ*^{2}, բն.՝ 16,8 մլն (2013): Մայրաքաղաքը՝ *Ամստերդամ*: Պետ. լեզուն՝ նիդեռլ.: Կառավարման ձևը՝ միապետ.: Պետության գլուխը թագավորն է (թագուհի), օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը: Բաժանված է 12 վարչ. պրովինցիաների: Հավատացյալները կաթոլիկ և բողոքական են: Անդամակցում է ՄԱԿ-ին, ՆԱՏՕ-ին, ԵՄ-ին, ԵԱՀԿ-ին, ԱՌՀԿ-ին ևն: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 39,2 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է մեքենաներ և սարքավորումներ, բնական գազ, քիմիկատներ, սննդամթերք ևն, ներմուծում՝ նավթ, ավտոմեքենաներ, գունավոր մետաղներ, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ եվրո:

Մ. թ. ա. I հզ-ամյակի 2-րդ կեսին Ն-ի տարածքում բնակվել են կելտ., մ. թ. սկզբին՝ գերմ. ցեղեր: Մ. թ. ա. I դ-ում Ն-ի տարածքի մի մասը գրավել են հռոմեացիները: Մ. թ. III–IV դդ-ում բնակություն են հաստատել ֆրանկները (հվ-ում), սաքսերը (արլ-ում), ֆրիզները (հս-ում): Ֆրանկ. պետության կազմավորումից (V դ.) հետո Ն-ի տարածքը մտել է նրա մեջ: Ն-ում արմատավորվել են ավատ. հարաբերությունները, տարածվել է քրիստոնեությունը: XII դ-ից զարգացել են քաղաքները, որոնք դարձել են առևտրաարհեստավոր. կենտրոններ: 1477-ին (վերջնականապես՝ 1482-ին) Ն. հպատակվել է *Հաբսբուրգներին*, իսկ 1556-ին՝ Իսպանիային: 1566-ին սկսված բուրժ. հեղ-յան ընթացքում իս-

պանացիները վտարվել են գրեթե ամբողջ երկրից: 1581–ին Ն–ի հս–ում կազմավորվել է Միացյալ Նահանգների Հանրապետությունը, որի մեջ մտել են Զելանդիան, Հոլանդիան, Ուտրեխտը, Գելդեռնը, Օվերեյսելը, Ֆրիսլանդիան, Գրոնինգենը ևն: 1603–ին Իսպանիան փաստացի ճանաչել է հանրապետության անկախությունը: Ն. առաջին երկիրն էր, որտեղ իրագործվել է բուրժ. հեղ–յուն և ստեղծվել առաջին բուրժ. հանրապետությունը: Միացյալ Նահանգների Դաշն. Հանրապետությունը (երբեմնի տնտեսապես ամենազարգացած նահանգ–ի՝ Հոլանդիայի անունով անվանվել է Հոլանդիայի Հանրապետություն, Հոլանդիա) մի քանի տասնամյակում իր զարգացմամբ առաջ է անցել եվրոպ. մյուս պետություններից: XVII–XVIII դդ–ում Ն. գաղութ. նվաճումներ է սկսել Հվ–արլ. Ասիայում, Ամերիկայում, Աֆրիկայում և դարձել գաղութ. կայսրություն: Հիմնադրվել են առևտր. հզոր Արլ–ինդ. և Արմ–ինդ. ընկ–ները: XVII–XVIII դդ–ում անգլո–հոլ. պատերազմների հետևանքով հոլանդացիները դուրս են մղվել ծով. առևտրից և կորցրել մի շարք գաղութներ, թուլացել է Ն–ի ռազմ. և քաղ. հզորությունը: 1795–ին գրավել են ֆրանս. զորքերը, նրա տարածքում ստեղծել Բատավյան Հանրապետությունը, իսկ 1806–ին՝ Հոլ. թագավորությունը՝ Նապոլեոն I–ի եղբոր՝ Լուի Բոնապարտի գլխավորությամբ: 1810–13–ին Հոլանդիան ֆրանս. կայսրության կազմում էր: 1814–15–ին *Վիեննայի վեհաժողովի* որոշմամբ Ն. և Բելգիան միավորվել են Ն–ի Թագավորության մեջ: 1830–ի հեղ–յամբ Բելգիան անկախացել է: Եվրոպայում 1848–ի հեղ. վերելքի պայմաններում Ն–ում ընդունվել է սահմանադրություն, որը սահմանափակում էր թագավորի իշխանությունը: ԱՀՊ–ի ժամանակ Ն. չեզոքություն է պահպանել, սակայն 1940–ին գերմ. զորքերը գրավել են այն: Ազատագրվել է 1944–45–ին: 1957–ին որոշ երկրների հետ նախաձեռնել է Եվրոպ. տնտ. ընկերակցության ստեղծումը, հետագայում կարևոր դեր է ունեցել համաեվրոպ. տնտ. և ռազմաքաղ. ինտեգրման հարցում, սակայն 2005–ին բնակչության 50 %–ից ավելին դեմ է քվեարկել Եվրոպ. սահմանադրությանը, Ֆրանսիայի հետ մերժել է ԵՄ միացյալ սահմանադրությունը: 2012–ի խորհրդարան. ընտրություններից հետո կազմվել է դաշն. հանուն ազատության ու ժողովրդավարության ՝ ժող. կուս–յան և Աշխ–ի կուս–յան մասնակցությամբ՝ վարչապետ Մարկ Ռյուտտեի գլխավորությամբ:

Հայերը Ն–ում բնակություն են հաստատել XVII դ–ի սկզբին: Շուրջ 70 հայ ընտանիքներ (հիմնականում՝ թանկարժեք քարերի և մետաքսի վաճառականներ) բնակվում էին Ամստերդամում: 1660–ից այստեղ գործել են հայկ. տպարաններ (տես *Ամստերդամի հայկական տպագրություն*): 1714–ին կառուցվել է հայկ. Սբ Հոգի եկեղեցին (վերաօծվել է 1989–ին): 1950–80–ական թթ–ին այդտեղ հաստատվել են Թուրքիայից, Իրանից, Ինդոնեզիայից, Հունաստանից տեղափոխված հայեր: 1990–ական թթ–ին եկել են նաև Իրաքից, Ռուսաստանից և Հայաստանից: Ներկայում (2017) Ն–ում բնակվում է շուրջ 7 հզ. հայ: Գործում են 2 հայկ. եկեղեցիներ՝ Ամստերդամում և Ալմելոյում, մի քանի մշակութ. ընկ–ներ («Արարատ», «Երևան», «Սևան», «Անի», «Մասիս» ևն), Լեյդենի համալսարանում՝ հայագիտ–յան ամբիոն: Ալմելո ք–ում 2014–ի ապրիլի 24–ին կանգնեցվել է Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված հուշարձան (վարպետ՝ Սերգեյ Դանիելյան, բարերար՝ Քրիստիան Զելիջի):

ՆԻԵԴԵ (Niedre) Յանիս (1909–1987), լատիշ գրող, գրականագետ: Լատվ. ԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1959): Հեղինակ է Լատգալում հեղ. պայքարի մասին «Պուշկանի գյուղը» (հ. 1–3, 1941–61), «Վետերան» (1968–72) եռերգությունների, «Եվ քամիներն զբոսնում էին հրդեհված տարածքում» (1978) վեպի, նաև լատվ. բանահյուսությանը և գրկ–յանը վերաբերող գրքերի:

ՆԻԶԱԿ (պհլ. nezak, nizag), **գեղարդ, տեզ, խիշտ**, խոցող հնազույն զենք: Գործածվել է որսի ժամանակ և մարտերում: Երևան է եկել հին քարի դարում: Նախն. Ն. եղել է սրածայր փայտե ձող: Հետագայում 1,5–5 *մ* ձողի ծայրին ամրացվել է սուր շեղր (քարի դարում՝ ոսկրե, բրոնզի դարից՝ մետաղե): Հնում Ն. դիտվել է որպես իշխանության խորհրդանիշ: Տես նաև *Աշտե, Մկունդ*:

ՆԻԶԱՄ ԷԴ–ԴԻՆ ՇԱՄԻՆ, պարսիկ մատենագիր: 1401–ին *Լանկ Թամուրի* պատվերով և վերահսկողությամբ շարադրել է նրա արշավանքների պատմությունը («Զաֆար Նամէ»՝ «Գիրք հաղթության»), որտեղ նկարագրված են նաև Հայաստան կատարած արշավանքները:

ՆԻԶԱՄԻ ԳԱՆՋԱՎԻ Աբու Մուհամմադ Իլյաս իբն Յուսուֆ (մոտ 1141–մոտ 1209), պարսիկ բանաստեղծ, մտածող: Հայտնի է նրա *«Հազարապյան»*–ը («Խամսե»)՝ բաղկացած «Գաղտնիքների գանձարան» (1173–80–ի միջև), «Խոսրով և Շիրին» (1181, հայ.՝ 1941), «Լեյլի և Մեջնուն» (1188, հայ.՝ 1947), «Յոթ գեղեցկուհի» (1197), «Իսկանդարնամե» (մոտ 1203) պոեմներից: Հեղինակ է նաև քասիդների, գազելների, կիտաների, ռուբայիների և այլ գործերի: Ն. Գ–ի պոեզիան մեծ ազդեցություն է թողել Մերձ. և Միջին Արևելքի ժողգ–ների գրկ–ների վրա: Հայ. հրատարակվել են նաև «Ընտիր գազելներ» (1940), «Բանաստեղծություններ» (1941), «Յոթ պատկեր» (1998) ժող–ներ:

ՆԻԺԵԳՈՐՈԴԻ ՄԱՐԶ, ՌԴ վտմ Մերձվոլգյան դաշն. օկրուգում: Տարածքը՝ 76,6 հզ. *կմ*^{2}, բն.՝ 3,34 մլն (2009): Վարչ. կենտրոնը՝ *Նիժնի Նովգորոդ*:

ՆԻԺՆԵԿԱՄՍԿ, ք. Թաթարստանում (ՌԴ), նվինգստ Կամայի ափին: Բն.՝ 226,6 հզ. (2009):

ՆԻԺՆԵՎԱՐՏՎՍԿ, ք. ՌԴ Խանտի–Մանսիյսկի ԻՕ–ում, նվինգստ Օբի ափին: Բն.՝ 245,9 հզ. (2009): Երկթղ. կայարան է:

ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈԴ (1932–90–ին՝ Գորկի), ք., ՌԴ *Նիժեգորոդի մարզի* վարչ. կենտրոնը՝ Օկայի և Վոլգայի միախառնման վայրում: Խոշոր գետ. նվինգստ է, երկթղ. հանգույց: Բն.՝ 1,27 մլն (2009): Գործում են բազմաթիվ բուհեր, թատրոններ, թանգարաններ, ճարտ. թանգարան–արգելոց ևն: Հիմնադրվել է 1221–ին: 1341–92–ին եղել է Նիժեգորոդի–Սուզդալի իշխանության մայրաքաղաքը:

ՆԻԺՆԻ ՏԱԳԻԼ, ք. ՌԴ Սվերդլովսկի մարզում: Երկթղ. հանգույց է: Բն.՝ 374,5 (2009): Մետակայքում արդյունահանվում է պղնձաքար: Հիմնադրվել է 1721–22–ին:

ՆԻԼԳԱՈՒ (Boselaphus tragocamelus), սնամեջ եղջերավորների ընտանիքի երկկճղակավոր կենդանի: Մարմնի երկ.՝ մոտ 2 *մ*: Ոչ մեծ եղջյուրներ ունեն միայն արուները: Ապրում են Հինդուստան թ–կղզու անտառներում:

ՆԻԼԻՆ Պավել Ֆիլիպովիչ (1908–1981), ռուս գրող: Հեղինակ է Դոնբասի հանքափորների մասին «Մեծ կյանք» (մաս 1, 2, 1940, 1958) ակնարկների ու կինոսցենարների ժող–ի, բարոյական և հաս. խնդիրներին առնչվող «Դաժանություն» (1956), «Փորձարկման շրջան» (1956), «Գերեզմանոցի միջով» (1962, հայ.՝ 1968) վիպակների, «Խենթություն» (1973), «Առաջին անգամ ամուսնացած կինը» (1978) պատմվածքների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941):

ՆԻԼՈՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, աֆրիկ. լեզուների խումբ: Ներառում է դինկա, նուեր, շիլլուկ, աչոլի, մասաի, լոտուկո և այլ լեզուներ (մոտ 45): Տարածված են Սուդանի և Եթովպիայի հվ–ում, Քենիայում, Ուգանդայում, Տանզանիայում:

ՆԻԼՍԲՈՐԻՈՒՄ (Nielsbohrium), Ns, տարրերի պարբեր. համակարգի V խմբի արհեստականորեն ստացված ճառագայթաակտիվ քիմ. տարր: Կարգաթիվը՝ 105: Առավել կայուն իզոտոպը՝ ^{262}Ns ($T_{1/2}$ = 40 վ): Ստացվել է 1970–ին ԽՍՀՄ–ում (Գ. Ն. Ֆլյորովի խումբ) և ԱՄՆ–ում (Ա. Գիորսո): Խորհրդ. ֆիզիկոսներն այն անվանել են Նիլս Բորի անունով, իսկ ամերիկացները՝ «հանիում»՝ ի պատիվ գերմանացի քիմիկոս Օ. Հանի: Անվանումը վերջնականապես ընդունված չէ:

ՆԻԼՍԵՆ (Nielsen) Աստա (1881–1972), դանիացի դերասանուհի: Համաշխ. ճանաչման է արժանացել համր կինոյում: Մարմնավորել է խորհրդավոր, «ճակատագրական» կանանց կերպարներ («Ապուշը», «Ֆրյոկեն Յուլիա», «Տխուր նրբանցք», երկուսն էլ՝ համր, «Անհավանական սեր», ինչուն): Նկարահանել է «Աստա Նիլսեն» (1968) ֆիլմը՝ նվիրված իր ստեղծագործ. գործունեությանը:

ՆԻԼՍԵՆ Կառլ (1865–1931), դանիացի կոմպոզիտոր, դիրիժոր: Դան. ազգ. կոմպոզիտոր. դպրոցի հիմնադիրներից: 1908–14–ին՝ Կոպենհագենի արքուն. թատրոնի գլխ. դիրիժոր, 1915–27–ին՝ երաժշտ. ընկ–յան դիրիժոր: Հեղինակ է «Սավուղ և Դավիթ» (1902), «Դիմակահանդես» (1906) օպերաների, նաև կանտատների («Ֆյունի գարունը», 1921, ևն), 6 սիմֆոնիայի (1892–1925), նախերգանքների, գործիք. կոնցերտների, կամեր–գործիք. և այլ երկերի:

ՆԻԼՍՈՆ (Nilson) Լարս Ֆրեդերիկ (1840–1899), շվեդ քիմիկոս: Հայտնաբերել է *սկանդիումը* (1879), որի հատկությունները համապատասխանում էին Դ. Ի. Մենդելեևի կանխատեսած էկաբորին: Ուսումնասիրել է հազվագյուտ տարրերը: Ճշտել է բերիլիումի ա. զ.:

ՆԻԼՍՈՆ Քրիստինա (1843–1921), շվեդ երգչուհի (սոպրանո): 1864–70–ին հանդես է եկել Փարիզի «Լիրիկ թատրոն»–ում, Փարիզի օպեր., Լոնդոնի «Քովենտ Գարդեն» թատրոններում (Դեզդեմոնա՝ Ջ. Վերդիի «Օթելլո», Ալիսա՝ Ջ. Մեյերբերի «Ռոբերտ–սատանա», Գիշերային թագուհի, Քերուբինո՝ Վ. Ա. Մոցարտի «Կախարդական սրինգ», «Ֆիգարոյի ամուսնությունը», ևն):

ՆԻԿԱՆԴՐՈՎ Նիկոլայ Դմիտրևիչ (ծ. 1936), ռուս մանկավարժ: ՌԿԱ ակադ. (1990, նախագահ՝ 1997–2013–ին): ՌԿԱ Սմոլնիի

համալսարանի ռեկտոր (1999–2013): Աշխ-ները վերաբերում են կրթության տեսությանը, համեմատ. մանկավարժությանը, բարձրագույն դպրոցի հիմնախնդիրներին: ՌԴ նախագահի մրց. (2001):

ՆԻԿԱՆՈՐ (աշխարհիկ անունը՝ Ալեքսանդր Իվանովիչ Բրովկովիչ, 1826–1890), ռուս ուղղափառ փիլ., հրապարակախոս, գրող: 1871-ից՝ եպս., 1886-ից՝ Խերսոնի և Օդեսայի արք.: 1868–71-ին՝ Կազանի հոգևոր ակադ-ի ռեկտոր: Հեղինակ է «Դրական փիլիսոփայություն և գերզգայական կեցություն» (հ. 1–3, 1875–88), «Եկեղեցին և պետությունը կոմս Լ. Տոլստոյի դեմ» (1888) և այլ աշխ-ների:

ՆԻԿԱՐԱԳՈՒԱ, **Նիկարագուայի Հանրապետություն** (República de Nicaragua), պետություն Կենտր. Ամերիկայում: Սահմանակից է Հոնդուրասին և Կոստա Ռիկային: Տարածքը՝ 130,4 հզ. *կմ*^{2}, բն.՝ 5,9 մլն (2009): Մայրաքաղաքը՝ ***Մանագուա***: Պետ. լեզուն՝ իսպ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ ԱԺ-ն: Բաժանված է 15 դեպարտամենտի և 2 ԻՄ-ի: Հավատացյալները հիմնականում կաթոլիկ են: Անդամակցում է ՄԱԿ-ին, ԱռտՀԿ-ին: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 2,8 հզ. դոլար է (2009): Արտահանում է սուրճ, ծխախոտ, մսամթերք, ոսկի, տեքստիլ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթ և նավթամթերք, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ կորդոբա:

Ն-ի ինագույն բնակիչները եղել են հնդկացիները (հիմնականում Մեքսիկայից եկած ացտեկներ ու տոլտեկներ), որոնց ցեղ. առաջնորդներից մեկի՝ Նիկարաոյի անունով էլ կոչվել է երկիրը: 1502-ին ափ են իջել առաջին իսպանացիները: 1522-ից սկսվել է երկրի նվաճումը, և այն դարձել է իսպ. գաղութ՝ Լեոն կենտրոնով: XIX դ-ի կեսից Ն-ում գերիշխանության համար պայքարել են Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ն: 1909-ից, որոշ ընդհատումներով, ԱՄՆ-ն նվաճել է Ն-ի տարածքը, որի դեմ պայքարի է դուրս եկել Ա. ***Սանդինոյի*** գլխավորած ջոկատը և ԱՄՆ-ին հարկադրել դուրս բերել իր զորքերը: 1934-ին Ա. Սանդինոն սպանվել է գնն. Ա. Սոմոսայի հրամանով, որը շուտով դարձել է նախագահ, և երկրում հաստատվել է Սոմոսա ընտանիքի բռնապետությունը: 1970-ական թթ-ի 2-րդ կեսից ծավալված երկարատև պայքարի շնորհիվ Ն-ի ժողդ-ը 1979-ին ազատվել է Սոմոսաների ռեժիմից: Երկրում իրականացվել են գղտ. բարեփոխումներ, բանկերի, արդ. ձեռնարկների ազգայնացում ևն: 1990-ի համընդհ. ընտրություններում իշխանության է եկել Ընդդիմադիր ազգ. միությունը (14 կուսյունների և կազմ-յունների դաշինք): 2006-ից երկրի նախագահը Դ. ***Օրտեգան*** է:

ՆԻԿԱՐԱԳՈՒԱՑԻՆԵՐ, ժողդ, Նիկարագուայի հիմն. բնակչությունը: Ընդհ. թիվը՝ 5,8 մլն (2009): Լեզուն՝ իսպ.: Հավատացյալները հիմնականում կաթոլիկ են, կան նաև բողոքականներ:

ՆԻԿԵ, **Նիկա**, հաղթանակի աստվածուհին հուն. դից-յան մեջ: Հաճախ այդպես էին անվանում ***Աթենաս*** աստվածուհուն, որին նվիրված Ն-ի տաճար էր կառուցվել Աթենքի Ակրոպոլիսում: Երկնքից իջնող աստվածների սուրհանդակի տեսքով Ն-ի արձաններ (ամենահայտնին՝ «Սամոթրակյան Նիկե») են կանգնեցվել ի նշան պատերազմում, մարզ. և գեղագիտ. մրցույթներում տարած հաղթանակի: Ն-ին համապատասխանում է հռոմ. ***Վիկտորիան***:

ՆԻԿԵԼ (Niccolum), Ni, տարրերի պարբեր. համակարգի VIII խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 28, ա. զ.՝ 58,69: Անվանումը ծագել է կուպֆերնիկել (< գերմ. Kupfer – պղինձ և Nickel – չար ոգի) միներալի (NiAs) անունից: Արծաթասպիտակավուն մետաղ է, խտ.՝ 8,90 *գ/սմ*^{3}, $t_{հալ.}$՝ 1455ºC: Կայուն է օդի և ջրի հանդեպ: Հիմն. միներալներն են նիկելինը, միլերիտը, պենտլանդիտը: Ն-ի մոտ 80 %-ն օգտագործվում է բարձրմեխ., մազնիս., ջերմաէլ., կոռոզիակայուն համաձուլվածքներ պատրաստելու համար: Օգտագործվում է էլեկտրականության հիմնային կուտակիչներ, քիմ. արդ-յան համար անհրաժեշտ իրեր, մետաղների և գեղազարդիչ ծածկույթներ ստանալու համար: Կարևոր կատալիզորդ է:

ՆԻԿԵԼԻ ՀԱՄԱՁՈՒԼՎԱԾՔՆԵՐ, ***նիկելի*** հիմքով համաձուլվածքներ՝ Cr, Mo, Co և այլ տարրերի հետ: Ն. հ. բնութագրվում են բարձր կրակամրությամբ, կոռոզիակայունությամբ, մեծ էլ. դիմադրությամբ, ֆիզմեխ. այլ հատկություններով: Տեխնիկայում մեծ կիրառություն ունեն նիկելի և քրոմի կրակակայուն համաձուլվածքները՝ ***նիքրոմները***: Ալյումինով, տիտանով, քրոմով և այլ տարրերով լեգիրված Ն. հ. (նիմոնիկները) ունեն բարձր կրակակայունություն: Ն. հ-ի շարքում կարևոր տեղ է գրավում ***մոնել-մետաղը***:

ՆԻԿԵԼԻ ՍՈՒԼՖԱՏ, $NiSO_4$, նիկելի ծծմբաթթվական աղը: Ջրում լուծվող դեղին բյուրեղ. նյութ է: Ջր. լուծույթներից բյուրեղանում է $NiSO_4 \cdot 7H_2O$ զմրուխտականաչ բյուրեղահիդրատի ձևով (նիկելարջասպ): Կիրառվում է էլեկտրոլիզի միջոցով մաքուր նիկել ստանալու և մետաղները նիկելապատելու համար:

ՆԻԿԵՓՈՐՈՍ Փոկաս, IX դ-ի հայազգի բյուզանդացի ռազմ. գործիչ: ***Նիկեփորոս II Փոկասի*** պապը: Թրակեսիոն բանակաթեմի զորավար, պատրիկ: Գործել է հայազգի կայսրեր Վասիլ I-ի և Լևոն VI Իմաստունի օրոք: 885-ին պարտության է մատնել Իտալիայի հվ. մասը նվաճած արաբներին. իրենց հազարավոր ազգակիցների ազատելու համար իտալացիները նրա պատվին կառուցել են տաճար:

ՆԻԿԵՓՈՐՈՍ II Փոկաս (մոտ 912–969), Բյուզանդիայի կայսր՝ 963-ից: ***Նիկեփորոս Փոկասի*** թոռը: 954-ին ***Կոստանդին VII Ծիրանածինը*** նրան նշանակել է Արևելքի զորքերի սպարապետ: Բազմաթիվ ճակատամարտերում հաղթել է արաբներին, 961-ին արաբների 135-ամյա տիրապետությունից ազատագրել է Կրետե կղզին: Գահ է բարձրացել արյ. նինգ-ների ավագանու և զորքերի աջակցությամբ: Կրետեի նվաճած քրիստոնյա բնակչությունն ստվարացնելու նպատակով երկիրը բռնի բնակեցրել է հայերով, որոնց բնակավայրերի անվանումները՝ Արմենի, Արմենոխոր ևն, պահպանվում են ցայսօր:

ՆԻԿԻԱՅԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ 325, գումարվել է Բութանիայի Նիկիա ք-ում. քննարկել է ***արիոսականության*** հարցը: Մասնակցել է 318 եպս., այդ թվում՝ Գրիգոր Ա Լուսավորչի կրտսեր որդին՝ Արիստակեսը (***Արիստակես Ա Պարթև***): Դատապարտելով Արիոսի հերետիկոս. ուսմունքը՝ ժողովը սահմանել է բոլոր քրիստոնյաների համար պարտադիր ***Հավատո հանգանակը***՝ Հոր և Որդու միագո էությունը:

ՆԻԿԻԲ (Nikisch) Արթուր (1855–1922), հունգար դիրիժոր, կոմպոզիտոր: Լայպցիգի (1882–89), Բուդապեշտի (1893–95) օպեր. թատրոնների գլխ. դիրիժոր: Ղեկավարել է Բոստոնի սիմֆ. (1889–93), Համբուրգի փիլհարմոնիկ (1897), Գևանդհաուզի (1895–1922) նվագախմբերը: Հեղինակ է մի շարք երկերի: Ն-ին աշակերտել է Կոստանդին ***Սարաջևը***:

ՆԻԿԻՏԱ ՔՈՆԻԱԹ (XII դ-ի կես–1213), բյուզանդացի գրող: Հեղինակ է «Ժամանակագրությունների», որտեղ նկարագրել է 1118–1206-ի պատմ. իրադարձությունները, ներկայացրել իր դիտարկումներն ու վիպ. մանրամասներ, քննել պատմ. անհատների հոգեբ-յունը, քննադատել բյուզ. բռնապետությունը:

ՆԻԿԻՏԻՆ Աֆանասի (ծ. թ. անհտ–1475), ռուս ճանապարհորդ: Ճանապարհորդություններ է կատարել Պարսկաստան և Հնդկաստան (1471–74): Հեղինակ է «Ճանապարհորդություն երեք ծովերից այն կողմ» խորագրով ձեռագրի:

ՆԻԿԻՏԻՆ Բորիս Ալեքսանդրովիչ (1906–1952), ռուս ճառագայթաքիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1943): 1950–52-ին՝ ԽՍՀՄ ԳԱ ռադիումի ինստ-ի տնօրեն: Ստացել է իներտ գազերի՝ ջրի և ֆենոլի հետ մի շարք մոլ. միացություններ: Ուսումնասիրել է ռադիումի տարածվածությունը բնական ջրերում: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943, 1949):

ՆԻԿԻՏԻՆ Իվան Նիկիտիչ (մոտ 1690–1742), ռուս գեղանկարիչ: Ռուս. աշխարհիկ գեղանկարչության հիմնադիրներից: Դիմանկարներն աչքի են ընկնում պատկերման հավաստիությամբ, ինչեղ կոլորիտով («Դաշտային հետևան», 1720-ական թթ., «Պետրոս I-ը մահվան մահճում», 1725, Ս. Պ. Ստրոգանովի դիմանկարը, 1726, ևն):

ՆԻԿԻՏԻՆ Նիկոլայ Վասիլևիչ (1907–1973), շին. կառուցվածքների բնագավառի ռուս. գիտնական: ՄՊՀ-ի Վորոբյան մասնաշենքի նախագծի մասնակից, Մոսկվայի Օստանկինոյի հեռուստաաշտարակի նախագծի հեղինակը:

ԽՍՀՄ Պետ. (1951), Լենինյան (1970) մրց-ներ:

ՆԻԿԻՏԻՆ Վլադիմիր Ալեքսանդրովիչ (1894–1977), ռուս. նավաշինարար: Էսմինեցների, կրեյսերների և այլ տիպերի նավերի գլխ. կոնստրուկտոր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942):

ՆԻԿԻՏԻՆ Ֆեոդոր Միխայլովիչ (1900–1988), ռուս. դերասան: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1969): Համր կինոյի նշանավոր դերասաններից («Փարիզեցի կոշկակարը», «Կայսրության բեկոր» ևն), նկարահանվել է նաև «Սպիտակին է տալիս առագաստը մենավոր», «Մուսորգսկի», «Մեզանից մեկը», «Եվ կյանք, և արցունքներ, և սեր...» (հնչուն) ֆիլմերում: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950, 1951):

ՆԻԿԻՖՈՐՈՎ Ալեքսանդր Սերգեևիչ (1926–1991), ռուս քիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1987): Սոց. աշխ. հերոս (1971): 1984–91-ին՝ Անօրգ. նյութերի ՀամԳՀԻ տնօրեն: Աշխ-ները վերաբերում են ճառագայթաքիմիային և հատուկ մաքրության նյութերի ստացման տեխնոլոգիային: Լենինյան (1962), ԽՍՀՄ Պետ. (1953, 1975) մրց-ներ:

ՆԻԿԼԱՈՒՍ (Nicklaus) Ջեկ Ուիլյամ (ծ. 1940), ամերիկացի մարզիկ (գոլֆ): Հաղթել է 115 մրցաշարերում՝ ներառյալ գոլֆի «Մեծ սաղավարտի» 8 մրցաշարը, այդ

թվում՝ «Մասթերս»-ը (6 անգամ, 1963–86), ԱՄՆ բաց (4 անգամ, 1963–80), Պրոֆեսիոնալ գոլֆիստների ասոցիացիայի (5 անգամ, 1963–80) և Մեծ Բրիտանիայի բաց (3 անգամ, 1966–78) առաջնություններում:

ՆԻԿՈԲԱՐՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ, 19 կղզուց բաղկացած կղզեխումբ Հնդ. օվկ-ում՝ Բենգալյան ծոցի և Անդամանյան ծովի միջև: Պատկանում են Հնդկաստանին: Տարածքը՝ 1,6 հզ. *կմ*²: Խոշոր կղզիներն ստորջրյա հրաբուխների գագաթներ են (մինչև 614 *մ*), փոքրերը բուստ. ծագման են: Տարածված են արևադարձ. մշտադալար անտառներ, մարգագետիններ: Աշակում են կոկոսյան արմավենի:

ՆԻԿՈԼ (Nicolle) Շառլ Ժյուլ Անրի (1866–1936), ֆրանսիացի մանրէաբան և մակաբուծաբան: Հաստատել է (1909), որ բծավոր տիֆի փոխանցողը հագուստի ոջիլն է: Նոբելյան մրց. (1928):

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ (Տեր-Հովհաննիսյան Նիկողայոս, 1867–1914), ազգ-ազատագր. շարժման գործիչ: 1896-ին հղացել է Խանասորի արշավանքի (1897, մասնակցել է որպես հիմնապետ) գաղափարը: 1904-ին մասնակցել է Ռազիի (Վարագա լ-ան մոտ) կռիվներին: 1905-ի հայ-թաթար. ընդհարումների ժամանակ կազմակերպել է հայերի ինքնապաշտպ-յունը (Բաքվում, Երևանում և այլուր): Ինքնասպան է եղել:

ՆԻԿՈԼ ԹՈՐՈՍՈՎԻՉ, Թորոսենց (1604–1681), եկեղեց. գործիչ, լեհահայոց և կաթոլիկ եկեղեցիների միության ջատագով: 1626-ին օծվել է եպս., նշանակվել լեհահայոց թեմի առաջնորդ: Ն. Թ-ի օրոք ծավալվել է հայերի բռնի կաթոլիկացումը: 1635-ին Ուրբանոս VIII պապը Ն. Թ-ին շնորհել է արքության տիտղոս և պատիվ:

ՆԻԿՈԼԱԵՎ, Անատոլի Վասիլևիչ (1902–1977), ռուս քիմիկոս-անօրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1966, թղթ. անդամ՝ 1958-ից): ԽՍՀՄ ԳԱ ՍԲ Նովոսիբիրսկի անօրգ. քիմիայի ինստ-ի հիմնադիր-տնօրեն (1957-ից): Աշխ-ները վերաբերում են աղային համակարգերի ֆիզքիմ. վերլուծությանը, ջերմագրությանը, ճառագայթաքիմիային և անօրգ. միացությունների լուծահանմանը:

ԽՍՀՄ ԳԱ Ն. Ս. Կուռնակովի անվ. մրց. (1977):

ՆԻԿՈԼԱԵՎ, Անդրիան Գրիգորևիչ (1929–2004), ԽՍՀՄ տիեզերագնաց օդաչու: Ավիացիայի գեն-մայոր (1970): ԽՄ հերոս (1962, 1970): Կատարել է տիեզ. 2 թռիչք (1962, 1970)՝ որպես տիեզերանավի օդաչու և հրամ. (գումար. ժամանակը՝ 21 օր 15 *ժ* 20 *ր*): 1-ին տիեզերագնացն է, որ տիեզերքում աշխատել է առանց սկաֆանդրի, մասնակցել 1-ին ռազմ. փոխձարարությանը:

ՆԻԿՈԼԱԵՎ, Գեորգի Ալեքսանդրովիչ (1903–1992), եռակցման ընագավառի ռուս գիտնական: ՌԳԱ ակադ. (1979): Սոց. աշխ. հերոս (1969): Աշխ-ները վերաբերում են եռակցված կառուցվածքների ամրությանը: Մասնակցել է կենսբ. հյուսվածքների ենթաձայն. միացման և կտրման մեթոդների մշակմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1972):

ՆԻԿՈԼԱԵՎ, Լեոնիդ Վլադիմիրովիչ (1878–1942), ռուս. դաշնակահար, կոմպոզիտոր: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1938): Արդի դաշնամուր. դպրոցի հիմնադիրներից: Աշակերտներից են Դ. Դ. *Շոստակովիչը*, Վ. Վ. *Սոֆրոնիցկին*, Մ. Վ. *Յուդինան*, Ս. Ի. *Սպրավինակին*: Հեղինակ է երաժշտ. երկերի:

ՆԻԿՈԼԱԵՎ, ք. Ուկրաինայում, համանուն մարզի վարչ. կենտրոնը՝ Սև ծովի Բուգի լիմանի ափին: Բն.՝ 498 հզ. (2014): Երկթղ. հանգույց է, գետ. և ծով. նվինգստ:

ՆԻԿՈԼԱԵՎԱ Օլեսյա (Օլգա Ալեքսանդրովնա, ծ. 1955), ռուս գրող: Հեղինակ է «Մանկուց հաշմանդամը» (1990), «Խաղաղության բանալիները» (1990), «Միանձնուհի Մարիայի հայտնությունը» (1991) վիպակների, «Զմեռային նավում» (1986), «Amor fati» (1997), «Իսպանական նամակներ» (2004) բանաստեղծությունների, «Այստեղ» (1990) բանաստեղծությունների ու պոեմների ժող-ների:

Բ. Լ. Պաստեռնակի անվ. (2002), ՌԴ ազգ. «Բանաստեղծ» (2006), ՌՈՒԵ Կիրիլի և Մեֆոդիի անվ. պատրիարք. գր. (2012) մրց-ներ:

ՆԻԿՈԼԱԵՎԻ ՄԱՐԶ, վտմ Ուկրաինայում: Տարածքը՝ 24,6 հզ. *կմ*², բն.՝ 1,16 մլն (2013): Վարչ. կենտրոնը՝ *Նիկոլաև*:

ՆԻԿՈԼԱԻ (Nicolay) Անդրեյ Լվովիչ ֆոն (Հենրիխ Լյուդվիգ, 1737–1820), ռուս. բանաստեղծ, մանկավարժ (ծագումով՝ գերմանացի), մեծ իշխան Պավել Պետրովիչի (*Պավել I*) ուսուցիչը (1769-ից) և անձն. քարտուղարը (1773-ից): Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. և նախագահ (1798–1803): Հեղինակ է գեղ. ստեղծագործություններ (գերմ.):

ՆԻԿՈԼԱԻ (Nicolai) Քրիստոֆ Ֆրիդրիխ (1733–1811), գերմանացի գրող, գրաքննադատ, հրտ.: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1804): Հեղինակ է «Գրական նամակների» (1759–65, Գ. Է. Լեսինգի և Մ. Մենդելսոնի հետ): Եղել է գրկ-յան մեջ նոր հոսանքների հակառակորդ, որի համար նրան քննադատել են Յ. Վ. Գյոթեն, Ֆ. Շիլլերը և ուր.:

ՆԻԿՈԼԱՉԵ Յակով Իվանի (1876–1951), վրացի քանդ.: ՎԽՍՀ ժող. նկարիչ (1946): ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի անդամ (1947): Վրաց. ժամանակակից քանդ-յան հիմնադիրը: Հեղինակ է դիմաքանդակների («Չախրուխաձե», 1944, ևն), հուշարձանների (Ի. Ճավճավաձեի մահարձանը, 1908–10, ևն): Ստեղծել է նաև Շիրվանզադեի դիմաքանդակը (1909), «Հայուհի» քանդակը (1910), Կամոյի բազմաֆիգուր հուշարձանը (1923–25): ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1948):

ՆԻԿՈԼԱՅ I (Նիկոլայ Պավլովիչ Ռոմանով, 1796–1855), Ռուսաստանի կայսր՝ 1825-ից (թագադրվել է 1826-ին): *Պավել I*-ի 3-րդ որդին: Հաջորդել է եղբորը՝ *Ալեքսանդր I*-ին: Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. անդամ (1826/27): Գահակալությունն սկսել է Դեկաբրիստների ապստամբության ճնշումով: Ավարտին է հասցրել ռուս. օրենսդրության համակարգումը, ամրապնդել է պետ. ապարատը: Նրա օրոք մտցվել են գրաքննչ. նոր օրենքներ (1826, 1828), սկսվել է երկթղ. կառուցումը, ճնշվել է 1830–31-ի Լեհ. ապստամբությունը, շարունակվել է *Կովկասյան պատերազմը* (1817–64), տեղի են ունեցել 1826–28-ի ռուս-պարսկ., 1828–29-ի ռուս-թուրք. և Ղրիմի (1853–56) պատերազմները: Արլ. Հայաստանը միացվել է Ռուս. կայսրությանը (տես *Թուրքմենչայի պայմանագիր* 1828), կազմվել է *Հայկական մարզը*, սահմանափակվել են Հայ եկեղեցու իրավունքները (տես *Պոլոժենիե*): 1837-ին Ն. I այցելել է Կովկաս և Հայաստան: Ն. I իրականացրել է *Սրբազան դաշինքի* սկզբունքները, օգնել է ճնշելու 1848–49-ի Հունգ. հեղ-յունը:

ՆԻԿՈԼԱՅ II (Նիկոլայ Ալեքսանդրովիչ Ռոմանով, 1868–1918), Ռուսաստանի կայսր՝ 1894–1917-ին (թագադրվել է 1896-ին): *Ալեքսանդր III*-ի ավագ որդին: Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. անդամ (1876): Նրա գահակալությունը համընկել է երկրի արդ-տնտ. արագ զարգացմանը: Նրա օրոք Ռուսաստանը պարտություն է կրել 1904–05-ի ռուս-ճապոն. պատերազմում: Ն. II ստորագրել է 1905-ի հոկտ. 17-ի մանիֆեստը: 1917-ի փետր. հեղ-յան ընթացքում Ն. II հրաժարվել է [մարտի 2 (15)] գահից (նաև որդու՝ Ալեքսեյի փոխարեն): *Ժամանակավոր կառավարության* օրոք եղել է կալանքի տակ: Ընտանիքի հետ գնդակահարվել է Եկատերինբուրգում՝ բանվորների, գյուղացիների և զինվորների պատգմ-ների Ուրալի մարզ. խորհրդի ղեկավարության որոշմամբ: 1998-ին Ն. II-ի աճյունի մնացորդները վերաթաղվել են Ս. Պետերբուրգի Պետրոպավլովյան ամրոցի տաճարում: Ն. II-ին և նրա ընտանիքի անդամներին սրբադասել են Արտ. ՌՈՒԵ-ն (1981) և ՌՈՒԵ-ն (2000): Արդարացվել է (2008):

Ն. II-ի օրոք ընդունվել է *Եկեղեցական գույքի բռնագրավման օրենքը* (1903), 1905–06-ին հրահրվել են *հայ-թաթարական ընդհարումները*, վերաբացվել է Հայկ. հարցը:

ՆԻԿՈԼԱՅ ՀՐԱՇԱԳՈՐԾ (IV դ.), Միրա ք-ի (Լիկիա, Փոքր Ասիա) արք., համաքրիստ. սուրբ. (մասունքները պահվում են Սբ Նիկոլայի բազիլիկում, ք. Բարի, Իտալիա):

ՆԻԿՈԼԱՅ ՆԻԿՈԼԱԵՎԻՉ (Կրտսեր, 1856–1929), Ռուսաստանի մեծ իշխան, հեծելազորի գեն. (1901): 1895–1905-ին՝ հեծելազորի գեն. տեսուչ: Նիկոլայ Նիկոլաևիչ Ավագի (1831–1891) որդին: 1905–08-ին՝ Պետ. պաշտպ-յան խորհրդի նախագահ: ԱՀՊ-ի ժամանակ՝ գերագույն գլխ. հրամ. (1914–15), Կովկասի փոխարքա և Կովկասյան բանակների գլխ. հրամ. (1915–17): 1919-ից՝ վտարանդի: Ռուս տարագիրների շրջանում համարվել է ռուս. գահի հավակնորդ:

ՆԻԿՈԼԱՅՈՍ ԼԻՐԱՑԻ, *Նիկոլաուս Լիրացի* (Nicolaus Lyranus, 1270–1340), ֆրանցիսկյան քարոզիչ, աստվածաբան: Աստվածաբան. մեկնող. գրվածքներից հայ. պահպանվել են «Մեկնութիւն սրբոյ Աւետարանին, որ ըստ Յովհաննու...» և «Մեկնութիւն թղթոյն Պօղոսի, որ առ Եբրայեցիսն...» աշխ-ները (Մտնդ., ձեռ. № 1411, 1412, 6903, 10539 և Երուսաղեմի մտնդ.):

ՆԻԿՈԼԱՈՍ ԿՈՒՋԱՑԻ (Nicolaus Cusanus, Նիկոլայ Կրեբս, 1401–1464), գերմանացի փիլ., աստվածաբան, գիտնական, եկեղեց. և քաղ. գործիչ: Կարդինալ (1448), Հռոմի Պիոս II պապի խորհրդականը: 1450-ին օծվել է եպս., նշանակվել պապական նվիրակ Գերմանիայում, 1458-ից՝ առաջնորդ. տեղապահ Հռոմում: Զբաղվել է մաթ-ով, աստղագիտ-յամբ: Կազմել է Կենտր. և Արլ. Եվրոպայի քարտեզը: Զարգացրել է բացարձակի (որպես հակադրությունների համընկնում) մասին ուսմունքը: Ն. Կ. Վերածննդի շրջանի գիտնականներից առաջինն է փորձել բացատրել մարդու և բնության բնական էությունը:

ՆԻԿՈԼԵՍԿՈՒ (Nicolescu) Կորինա (1922–1977), ռումին պատմաբան, արվեստաբան, բյուզանդագետ-արևելագետ, հա-

յագետ: Աշակերտել է Վ. *Բընդրցյանուին* և Հակոբ *Միրունուն*: Հայաստանում ծանոթացել է հայկ. ճարտ. և ձեռագիր հուշարձաններին. նպաստել է «Հայկական մանրանկարչության ալբոմ»-ի ռուս. հրտ-յանը (1975): Աշխ-ներում անդրադարձել է Ռումինիայում հայերի ստեղծած մշակութ. արժեքներին:

ՆԻԿՈԼԵՍԿՈՒ Միրոն (1903–1975), ռումին մաթեմատիկոս: Ռումինիայի ԳԱ ակադ. (1955) և նախագահ (1966–1975), ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1971): Աշխ-ները վերաբերում են ֆունկցիաների տեսությանը:

ՆԻԿՈԼԻ ՊՐԻՋՄԱ, լույսի բևեռացման օպտիկ. սարք: 1828-ին հայտնագործել է անգլիացի ֆիզիկոս Ու. Նիկոլը (1768–1851): Գործողությունը հիմնված է լույսի կրկնակի բեկման և լրիվ ներքին անդրադարձման երևույթների վրա:

ՆԻԿՈԼԻՇԻՆ Անդրեյ Իվանովիչ (ծ. 1973), ռուս մարզիկ (տափօղակով հոկեյ): ՌԴ ս. վ. վ. (1993): ԱՊՀ լավագույն հոկեյիստ (1994): Մասնակցել է Սթենլիի գավաթի եզրափակչին (1998):

ՆԻԿՈԼՅԱՆ Ալբերտ Վլադիմիրի (ծ. 1959), բռնցքամարտիկ: Միջազգ. կարգի ս. վ. (1970): ԽՍՀՄ (1979, 1981), աշխարհի գավաթի 2-րդ (1979) մրցանակակիր, Եվրոպայի չեմպիոն (1979):

ՆԻԿՈԼՍԿԻ Բորիս Նիկոլաևիչ (1931–2011), ռուս գրող: Ն. Ն. *Նիկոլսկու* եղբայրը: 1984–2006-ին՝ «Նևա» ամսագրի գլխ. խմբ.: Հեղինակ է ժամանակակից մտավորականության բարոյական խնդիրներին վերաբերող «Սպասում եմ և հուսով եմ» (1974), «Հիշողության բանաձևը» (1981), «Հառնել ի մեռելոց» (1989) վեպերի, բանակին նվիրված վիպակների, նաև պատմվածքների:

ՆԻԿՈԼՍԿԻ Բորիս Պետրովիչ (1900–1990), ռուս. ֆիզքիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1968): Սոց. աշխ. հերոս (1970): Մշակել է իոնափոխանակության տեսությունը ջր. լուծույթ–պինդ մարմին համակարգի և ապակե էլեկտրոդի համար:

ԽՍՀՄ Պետ. (1949, 1973), Լենինյան (1961) մրց-ներ:

ՆԻԿՈԼՍԿԻ Գեորգի Վասիլևիչ (1910–1977), ռուս. ձկնաբան: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1953): Աշխ-ները վերաբերում են էկոլոգիային, ձկների կարգաբանությանը, ձկնատնտ-յունների կենսբ. հիմունքներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

ՆԻԿՈԼՍԿԻ Միխայիլ Վասիլևիչ (1848–1917), ռուս. արևելագետ, սեմագետ, շումերագետ, ուրարտագետ: Ասուրագիտ-յան հիմնադիրը Ռուսաստանում: 1893-ին մարդաբան Ա. Ա. Իվանովսկու հետ գլխավորել է հնագիտ. արշավախումբը Հայաստան, կատարել (որոշ դեպքերում նորովի թարգմանել ու մեկնաբանել) մ. թ. ա. VIII–VII դդ-ի ուրարտ. արձանագրությունների ճշգրիտ պատճեններ, ուսումնասիրել *Մենուահինիլի* քաղաքատեղին: Ընդգծել է Ուրարտուի քաղաքակրթության յուրօրինակությունը Հին Արևելքում:

ՆԻԿՈԼՍԿԻ Նիկոլայ Նիկոլաևիչ (ծ. 1931), ռուս. բջջաբան: ՌԴԱ ակադ. (1992): Բ. Ն. *Նիկոլսկու* եղբայրը: Աշխ-ները վերաբերում են բջջ. կենսբ-յանը, հիմնականում՝ բջջի վրա ազման գործոնների ազդեցությանը և ազդանշանների ներբջջ. հաղորդմանը: Ն. Ի. Վավիլովի անվ. մրց. (2008):

ՆԻԿՈԼՍԿԻ Սերգեյ Իվանովիչ (1923–2002), ռուս. ֆիզիկոս: ՌԴԱ թղթ. անդամ (1984): Աշխ-ները վերաբերում են բարձր էներգիաների և տիեզ. ճառագայթների ֆիզիկային: Ղեկավարել է տիեզ. ճառագայթների մթն. լայն տարափների համալիր հետազոտությունները Պամիրում, Տյան Շանում և Յակուտիայում: Լենինյան մրց. (1982):

ՆԻԿՈԼՍԿԻ Սերգեյ Միխայլովիչ (1905–2012), ռուս. մաթեմատիկոս: ՌԴԱ ակադ. (1972): Աշխ-ները վերաբերում են ֆունկցիոնալ վերլուծությանը, ֆունկցիաների մոտավորությունների տեսությանը, քառակուս. բանաձևերին, մասնակի ածանցյալներով հավասարումների եզրային խնդիրներին:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1952, 1977, 1987):

ՆԻԿՈԼՍՈՆ (Nicholson) Ուիլյամ (1753–1815), անգլիացի ֆիզիկոս, քիմիկոս և ճարտարագետ: Աշխ-ները վերաբերում են էլեկտրականությանը, մոլ. ֆիզիկային և էլեկտրաքիմիային: Ստեղծել է Անգլիայում առաջին էլ. մարտկոցը և հայտնաբերել հոսանքով ջուրը տարրալուծելու երևույթը (1800), բացահայտել (1802) հոսանքի լուս. հատկությունը:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐՏԱՎԱԶԴ, XIV դ-ի մաթեմատիկոս: Աշխատել է Բյուզանդիայի կայսեր. պալատում, որտեղ ստացել է գավազանակիր (ռարդա) տիտղոսը: Ն. Ա-ից մեզ հասել են մաթ. 2 հուն. աշխ-ներ՝ նամակների ձևով: Դրանք վերաբերում են հուն. հաշվող. արվ-ին և հիշեցնում են *Անանիա Շիրակացու* թվաբ-յան դասագիրքը: Ն. Ա-ի 1-ին աշխ-ը միակ փաստաթուղթն է, որի շնորհիվ պահպանվել և մեզ են հասել ձեռքի մատների միջոցով 1–9999 թվերը ներկայացնելու եղանակ: Միաժամանակ շարադրված են թվից քառակուսի արմատ հանելու մոտավոր բանաձևեր: Անդրադարձել է նաև տոմարի հարցերին: 2-րդը երկրչփ. աշխ-ն է, ձեռագիրը պահվում է Փարիզի ազգ. գրադարանում:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԾԱՂԿԱՐԱՔ, Նիկողայոս *Մելանավոր* (ծ. թ. անհտ–1693), գրիչ, մանրանկարիչ: Ղրիմի մանրանկարչության դպրոցի ներկայացուցիչ: Օգտվելով XIII–XIV դդ-ի ձեռագրերից՝ Ն. Ծ. իր համար մշակել է հատուկ պատկերագր. շարք, հորինվածքներում կատարել որոշ փոփոխություններ: 1647–93-ին Ն. Ծ-ի ընդօրինակած հայտնի 34 ձեռագրից 30-ը Մոնդ-ում են: Բազմացրել է նաև լավագույն վարպետների ձեռագրերի օրինակներ, եղել հմուտ կազմարար:

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Առնոլդ (ծ. 1936), տիեզ. բժշկագիտ-յան բնագավառի մասնագետ: Բժշկ. գիտ. դ-ր (1972): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (1998): Ջոնսոնի անվ. տիեզ. կենտրոնում (ԱՄՆ) եղել է «Սոյուզ–Ապոլոն» թռիչքի բժիշկը, ապա՝ ՆԱՍԱ-ի բնական ու միկրոգրավիտացիոն գիտ-յունների և տիեզ. թռիչքների ապահովման բաժինների ղեկ., միաժամանակ՝ կենտրոնի գլխ. տնօրենի տեղակալ: «Ավիացիա, տիեզերք և էկոլոգիական բժշկություն» հանդեսի խմբ.: 1989-ին կազմակերպել է բժշկ. հեռուստակամուրջ Երևանի և Ուֆայի միջև: ՆԱՍԱ-ի գերազանց ծառայության (1993, 2001), ՌԴԱ Ս. Պ. Կորոլյովի անվ. ոսկե (1993) մեդալներ:

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Արթուր Գարեգինի (ծ. 1941), աստղաֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1986): Աշխ-ները վերաբերում են գազ. միգամածությունների ֆիզիկային, ճառագայթման տեղափոխման ոչ գծային խնդիրների լուծմանը և ոչ կոհերենտ ցրման տեսության մաթ. ապարատի ստեղծմանը, աստղ. մթն-ում բռնկումային երևույթների ֆիզիկային:

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Գայանե Գերասիմի (1921–2010), հիգիենիստ: Բժշկ. գիտ. դ-ր (1969), պրոֆ. (1970): 1992-ից՝ Լոս Անջելեսում: Աշխ-ները վերաբերում են երեխաների առողջ. վիճակի հետազոտման, ֆիզ. զարգացման, մանկ. հիմնարկներում ուսում-նադաստիարակչ. աշխ-ներին: ՀԽՍՀ ԱՆ երեխաների առողջության պահպանության գլխ. մասնագետ (1970–89):

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Երվանդ Հովհաննեսի (1928–2014), նկարիչ: Հեղինակ է «Կոմպոզիցիա Ա Բ Գ Դ», «Տուլչայի նավահանգիստը», «Ոգեկոչում» («Թրակիացի ասպետը»), «Լեռնային բնանկար», «Քաղաքի պատուհանները», «Գույների բալետը» և այլ գործերի: Ռումինիայի «Աշակութային արժանիք» շքանշան (1968):

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Հայկ Արայի (ծ. 1955), առողջապ-յան կազմակերպիչ: Բժշկ. գիտ. դ-ր (1990), պրոֆ. (1993): ՀՀ ԱՆ նախարար (1998–2000): Աշխ-ները վերաբերում են ՀՀ-ում առողջապ-յան զարգացմանը, նոր տնտեսագիտ. չափորոշիչներին, բժշկ. ապահովագրության մեխանիզմների ներդրմանը, հանրային առողջապ-յանը և ոչ տարափոխիկ հիվանդությունների կանխարգելման մեթոդների մշակմանը: Բժշկ. ախտորոշման հայկ. միության նախագահ (1997–2004), Ռուսաստանի էկոլոգ. ակադ-ի անդամ (1998): ԱՀԿ ծխախոտի դեմ պայքարի միջազգ. համաձայնագրի մշտ. քարտուղարության ղեկ. (2007-ից):

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Նիկողայոս Բագրատի (ծ. 1918), քանդ.: ՌԽՖՍՀ վաստ. (1970), ՀԽՍՀ (1977), ԽՍՀՄ (1982) ժող. նկարիչ: Ռուսաստանի գեղարվ-ի ակադ-ի անդամ (2001): 1944-ից՝ Մոսկվայում: Հեղինակ է «Պարտիզանի ընտանիքը» (1942) արձանիկների շարքի, «Չեմ ասի» (1942), «Վերջին խուրձը» (1943) հաստոց. քանդակների, «Արամ Խաչատրյան» (1954), «Արա Սարգսյան» (1960) դիմաքանդակների, Մ. Նալբանդյանի (1966), Ա. Իսահակյանի (1976), Ե. Չարենցի (1985) հուշարձանների, նաև գեղանկարչ. («Ինքնանկար կարմիր գլխարկով», 1977), գրաֆիկ. («Վարդան Աճեմյանի դիմանկարը», 1974) գործերի:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1977), ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» (2008), ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2009) շքանշաններ:

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Ռուբեն Վլադիմիրի (ծ. 1940), վնասվածքաբան-օրթոպեդ: Բժշկ. գիտ. դ-ր (1999), պրոֆ. (2003): ՀՀ վաստ. գյուտարար (1998): Աշխ-ները վերաբերում են վնասվածքաբանությանը և օրթոպեդիային, համակցված վնասվածքների բուժմանը, բժշկության և առողջապ-յան կազմակերպմանը: ՀՀ ԱՆ գլխ. վիրաբույժ և օրթոպեդ (1983–90), Աղետների բժշկության գլխ. մասնագետ (1990–99), ԱՊՀ երկրների աղետների բժշկության համակարգող խորհրդի (1990–ից), ՄԱԿ-ի Աղետների բժշկության ազգ. և տարածաշրջ. ծրագրերի գիտ. խորհրդատու (1997–2002):

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Վահագն Արամի (1910–1997), վինագործ: Թուրքիայում հիմնադրել է ջութակի պատրաստման, վերականգնման արհեստանոց (1936): 1958-ից՝ ԱՄՆ-ում: 1964–68-ին՝ ջութակի իտալացի վարպետ Սիմոն Ֆեռնանդո Սակոնիի օգնականը: Նյու Յորքում բացել է «Ստրադիվարիուս» արհեստանոցը:


ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Վիլեն Գարեգինի (ծ. 1932), մանրէաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1998): Հայտնաբերել ու նկարագրել է քարաքոսի նոր տեսակ, նաև մի շարք նոր ոչ համակեցութային ազոտսևեռողներ և պարզել նրանց դերը բնական էկոհամակարգերում: Ուսումնասիրել է Սևանա լճի մանրէների միջոցով իրականացվող ազոտի շրջանառությունը: ՀՀ ԱԺ հուշամեդալ (2013):

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Տիգրան Վոլոդյայի (ծ. 1955), խմբ., հրապարակախոս, արձակագիր: ՀՀ վաստ. լրագրող (2010): 1987–94-ին՝ «Դպրություն» թերթի (այժմ՝ «Կրթություն») գլխ. խմբ-ի տեղակալ, 1999-ից՝ «Հայաստան» թերթի գլխ. խմբ.: Հեղինակ է էսսեների, պատմվածքների, ակնարկների ժող-ների («Մարիամ իշխանուհի», 2012, «Ցավի և սիրո բացիկներ», 2016, ևն):

ՀԺՄ (1985), ՀԳՄ Ս. Սիմոնյանի անվ. (1998) մրց-ներ, Ֆրիտյոֆ Նանսեն հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2004):

ՆԻԿՈՄԵԴ (մ. թ. ա. III–II դդ.), հույն երկրաչափ: Առաջինն է ուսումնասիրել կոնքարդ կորը (*Նիկոմեդի կոնքարդ*), ստեղծել է այդ կորը գծելու գործիք: Կոնքարդը կիրառել է տրված մեծությունների միջև 2 միջին համեմատական և խորանարդի կրկնապատկման խնդիրները լուծելու համար:

ՆԻԿՈՄԵԴԻ ԿՈՆՔԱՐԴ (հուն.՝ Konchoerides – խեցանման), 4-րդ կարգի հանրահաշվ. կոր. նկարագրում է այն բոլոր կետերի բազմությունը, որոնք ստացվում են տվյալ ուղղի կետերի շառավիղ-վեկտորներով: Դիտարկել է հին հույն երկրաչափ *Նիկոմեդը*: Ն. կ-ի հավասարումը Դեկարտյան կոորդինատներում՝ $(a^2 + b^2)(y - a)^2 - l^2y^2 = 0$, բևեռ. կոորդինատներում՝ $r = a/\sin(\varphi) \pm 1$: Ասիմպտոտն է $x = a$ ուղիղը:



ՆԻԿՈՄԵԴԻԱՅԻ ԲԱՐԲԱՌ, հայ-ի «կը» ճյուղի բարբառ: Խոսվել է Նիկոմեդիա (Իզմիթ), Ադաբազար ք-ներում և շրջակա գյուղերում: Ունի եռաստիճան (պ>բ, բ>պ, փ) բաղաձայն. համակարգ:

ՆԻԿՈՄԵԴԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Նիկոմեդիայի (այժմ՝ Իզմիթ՝ Թուրքիայում) գվդ-ում գործել են մի քանի հայկ. տպարաններ: Նիկոմեդիա ք-ի 1-ին տպարանը հիմնադրվել է 1850-ին. տպագրվել է *«Հայրենասէր»* երկշաթաթերթեր: 1912–15-ին գործել է Օննիկ Ազարյանի տպարանը: Արմաշ գ-ի Չարխափան Սբ Աստվածածին վանքի տպարանը գործել է 1863-ից, տպագրել է շուրջ 20 անուն գիրք, նաև *«Յոյս»* (1864–78) ամսագիրը, «Մասիս» (1896) կրոն. շաբաթաթերթը, Պարտիզակ ք-ում՝ «Դրասեր» և «Ճարյան» տպարանները, որտեղ տպագրվել են հիմնականում պարբ-ներ, Ադաբազար ք-ում՝ Հարություն Աթանասյանի «Ատրուշան» (1911-ից) և Ս. Ալթունյանի (1914-ից) տպարանները:

ՆԻԿՈՅԱՆ Հենրիկ Սուրենի (ծ. 1936), նկարիչ-դիզայներ: Պրոֆ. (1992): Գեղ. ապակու, գեղանկարչության, դիզայնի բնագավառներում ստեղծել է ուշագրավ կոմպոզիցիաներ («Տիեզերք», 1963, բյուրեղապակի, «Ֆյունիկ թռչուն», 1980, գունավոր բյուրեղապակի, Գյումրիի դրամատիկ. թատրոնի ճեմասրահ) ևն: ԽՍՀՄ ԺՏՆՑ արծաթե, բրոնզե մեդալներ (1978):

«ՆԻԿՈՆ» կորպորացիա, լուսանկարչ. ապարատներ արտադրող ճապոն. ընկ. և արտադրանքի ապրանք. նշան: Միցուրիսիի խմբի կազմում: Հիմնադրվել է 1917-ին՝ Նիպոն Կոգակու Կ. Կ. անունով, վերանվանվել՝ 1988-ին:


ՆԻԿՈՆԵՆԿՈ Սերգեյ Պետրովիչ (ծ. 1941), ռուս դերասան, կինոռեժ.: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1991): 1961-ից նկարահանվում է կինոյում («Զանգում են, բացեք դուռը», «Կարմիր հրապարակ», «Տարօրինակ մարդիկ», «Ուղևորուհին» ևն): Նկարահանել է «Թռչուններ քաղաքի երկնքում» (1974), «Ամեն ինչ միևնույնն է» (1976), «Ուզում եմ գնալ Ամերիկա» (1993), «Վտանգավոր արձակուրդ» (2016) և այլ ֆիլմեր (նաև խաղացել):

ՆԻԿՈՍԻԱ, (Nicosia), **Լեֆկոսիա**, Կիպրոսի Հանրապետության մայրաքաղաքը՝ Կիպրոս կղզու կենտր. մասում: Բն.՝ 272 հզ. (2010): Ունի միջազգ. օդանավակայան: Գործում են բազմաթիվ գրադարաններ, թանգարաններ, թատրոններ: Ճարտ. հուշարձաններից են գոթ. Սբ Սոֆիա (XIII–XIV դդ.), Աստվածամոր և ավգուստինյան տաճարները (երկուսն էլ՝ XIII դ.), քաղաք. անսամբլը (գոթ. բազիլիկ, XIV–XVI դդ.) ևն: Հիմնադրվել է մ. թ. ա. VII դ-ում: 1974-ից քաղաքի հս. մասը ինքնահռչակ Հս. Կիպրոսի Թուրք. Հանրապետության կազմում է:

Դեռևս IV–V դդ-ում Ն-ում եղել են հայ պաշտոնյաներ, զինվորականներ, առևտրականներ: Ներկայում (2017) ապրում է շուրջ 1,5 հզ. հայ: Գործում են Սբ Աստվածածին հայկ. եկեղեցին, հայկ. կիրակնօրյա դպրոցներ: 1924–2005-ին գործել է Մելքոնյան կրթ. համալիրը:

ՆԻԿՈՏԻՆ [ֆրանս.՝ Nicotine, ֆրանսիացի դիվանագետ Ժ. Նիկոյի (J. Nicot) անունով, որը 1560-ին առաջինն է ծխախոտը ներմուծել Ֆրանսիայ, 1-մեթիլ-2-(3-պիրիդիլ)-պիրոլիդին: Ալկալոիդ է, պարունակվում է ծխախոտի մեջ (մինչև 2 %) և այլ բույսերում: Ցնդող, անգույն, յուրահատուկ հոտով ջրում լուծելի հեղուկ է: Ուժեղ թույն է: Ն-ի մեծ չափաբաժիններն ընկճում և հանգեցնում են լուծանքի, շնչառության, սրտի կանգի: Ոչ մեծ չափաբաժինների բազմակի ընդունումը կարող է առաջացնել ընտելացում (նիկոտինիզմ): Ն-ից ստանում են *նիկոտինաթթու*:

ՆԻԿՈՏԻՆԱԹԹՈՒ, նիացին, վիտամին PP, 3-պիրիդինկարբոնաթթու: B խմբի ջրալույծ վիտամին, պիրիդինի ածանցյալ: Ն-ով հարուստ են խմորասնկերը, ցորենի թեփը, միսը (հատկապես՝ լյարդը և երիկամները): Վիտամին. ակտիվությամբ օժտված է նաև Ն-ի ամիդը (նիկոտինամիդ): Ն-ի անբավարարության դեպքում առաջանում է պելագրա: Ն. օգտագործում են լյարդի, սրտի, ստամոքսի և 12-մատնյա աղիի խոց. հիվանդության, դանդաղ ապաքինվող խոցերի ու վերքերի բուժման համար, որպես անոթալայնիչ՝ վերջույթների, երիկամների, գլխուղեղի արյան անոթների կծկանքների ժամանակ:



ՆԻԿՈՐՈՎԻՉ (Nikorowicz) Իգնացի (1866–1951), լեհահայ դրամատուրգ, բանաստեղծ, հրապարակախոս: 1892-ին՝ «Շվիատ» կիսամյա պարբ-ի խմբ.: «Զագլոբա» (1894, Լվով) երգիծ. շաբաթաթերթի հիմնադիր: Գրել և բեմադրել է «Մարդը օտար մոլորակից» (1909), «Պան Կիշոցկի» (1913), «Մարդը» (1950) և այլ պիեսներ: Հեղինակ է նաև «Ձմռան քամի» (1915), «Անմահ սիրուհին» (1929) բանաստեղծությունների, «Արծաթե սայլ» (1929) բանաստեղծությունների ու պիեսների ժողովների: «Լվովի գրական մրցանակ» (1930):

ՆԻԿՈՐՈՎԻՉ Յոզեֆ (1824–1890), լեհահայ կոմպոզիտոր: Հեղինակ է երգերի, դաշնամուր. վալսերի, մազուրկաների, պոլոնեզների: Ն-ի լեհ. երգերից մի քանիսը Մ. Պ. *Մուսորգսկին* օգտագործել է իր «Առաջնորդ» երկում: Կ. *Միկուլին* այդ երգը վերածել է խմբերգի՝ դաշնամուրի նվագակցությամբ:

ՆԻԿՈՒԼԻՆ Լև Բենիամինովիչ (1891–1967), ռուս գրող: Հեղինակ է վեպերի, 1813–14-ի ռուս. բանակի արշավանքի մասին «Ռուսաստանին հավատարիմ որդիները» (1950) պատմավեպի և այլ գործերի: Հայ. հրատարակվել է «Անհողմ ծփանք» (1977) վեպը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1952):

ՆԻԿՈՒԼԻՆ Յուրի Վլադիմիրովիչ (1921–1997), կրկեսի ռուս արտիստ, կինոդերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1973): Սոց. աշխ. հերոս (1990): Կրկեսում (1950-ից) ստեղծել է ալարկոտ, փոքր-ինչ պարզամիտ մարդու դիմակ՝ հակադրելով շարժուն և անհանգիստ խաղընկերոջը (Մ. Շույդին): 1982–97-ին՝ Մոսկվայի կրկեսի գլխ. ռեժ. և տնօրեն: Նկարահանվել է կինոյում («Կովկասի գերուհին», «Ադամանդե ձեռքը», «Ծերունի ավազակներ», «Նրանք մարտնչում էին հայրենիքի համար», «Խրտվիլակ» ևն): ՌԽՖՍՀ Վասիլև եղբայրների անվ.Պետ. մրց. (1970):

ՆԻՀԻԼԻԶՄ (լատ.՝ nihil – ոչինչ), 1. լայն առումով՝ հանրահայտ արժեքները (իդեալներ, բարոյական նորմեր, մշակույթի նվաճումներ) ժխտող աշխարհըմբռնում: Ն. առավելապես տարածվում է հաս-պատմ. զարգացման ճգնաժամ. ժամանակներում: Հասկացությունը ներմուծել է գերմանացի իդեալիստ փիլ. Ֆ. *Յակոբին*, իսկ պատմամշակութ. իմաստով առաջին անգամ արտահայտվել է Ֆ. *Նիցշեի* ուսմունքում, ապա՝ էկզիստենցիալիզմում: 2. Իրավունքի հաս. արժեքը ժխտող հաս-քաղ. մտքի ուղղություն, որն իրավունքը համարում է հաս. հարաբերությունները կարգավորող առավել անկատար միջոց:

ՆԻՄ (Nîmes), ք. Ֆրանսիայի հվ-ում, Գար դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 155 հզ. (2010): Ճարտ. հուշարձաններից են հռոմ. շինությունները՝ Օգոստոսի հաղթակամարը (մ. թ. ա. I դ.), «Մեզոն Կառե» (մ. թ. ա. I դ-ի վերջ–մ. թ. I դ-ի սկիզբ) և Դիանայի (մ. թ. I–II դդ.) տաճարները:

ՆԻՄԵՅԵՐ, Նիմեյեր Սուարիս Ֆիլյու (Niemeyer Soares Filho), Օսկար (1907–2012), բրազիլացի ճարտ.: ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի պատվ. անդամ (1983): Բրազիլ. ժամանակակից ճարտ. դպրոցի հիմնադիրը: Նորովի է վերամշակել երկաթբետոնե կառուցվածքները, ձգտել նրանց գեղագիտ. արտահայտչականության, պլաստիկ. ձևերի հարստության (շինությունների համալիր Պամպուլիեում, 1942–43, Բրազիլիա ք-ի կառուցապատումը, 1957-ից):

ՆԻՄԻՑ (Nimitz) Չեստեր Ուիլյամ (1885–1966), ամերիկացի ծովակալ (1944):

ԵՀՊ-ի ժամանակ Խաղաղօվկիանոս. տարածաշրջանի ամերիկ. ռազմ. ուժերի (1942–ից), Խաղաղ օվկ-ի ՌԾՈՒՒ (1945–ից) գլխ. հրամ.: 1945-ի սեպտ. 2-ին ԱՄՆ անունից ստորագրել է Ճապոնիայի կապիտուլյացիայի ակտը:

ՆԻՄՖԱ (հուն.՝ nymphe – այստեղ՝ հարսնյակ, թրթուր), հոդվածոտանիների (տզեր, որոշ միջատներ) զարգացման թրթուր. փուլ՝ ոչ լրիվ կերպարանափոխությամբ (տզեր, առաջնաբանթներ և որոշ թևավոր միջատներ): Բազմակի խորհափոխությունից հետո կերպարանափոխվում է սեռահասուն առանձնյակի:

ՆԻՄՖԱԼԻԴՆԵՐ (Nymphalidae), ցերեկ. թիթեռների ընտանիք: Թևերի բացվածքը՝ 2,5–8 *սմ*: Հայտնի է 2 հզ. տեսակ: Հատկապես բազմատեսակ ու բազմաքանակ են արևադարձներում: Առանձնապես հայտնի են ժապավենաթիթեռները, կալիմները, ադմիրալը, եղնջաթիթեռը, երնջնակի թիթեռը, սգաթիթեռը, սադափաթիթեռը, դիցհման ևն: 13 տեսակ պահպանվում է:

ՆԻՄՖՈՄԱՆԻԱ (< հուն. nymphe – հարս, երիտասարդ կին և ***մանիա*** (բժշկ.), կանանց մոտ սեռ. հակման ցավագին ուժեղացումը:

ՆԻՅԱԶԻ (Թաղի-զադե-Հաջիբեկով Նիյազի Զուլֆուղարի, 1912–1984), ադրբջանցի դիրիժոր, կոմպոզիտոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1959): Սոց. աշխ. հերոս (1982): 1951–65-ին (ընդմիջումով)՝ Ադրբջանի ՕԲԹ-ի գլխ. դիրիժոր, 1938–ից՝ սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ., 1979–ից՝ ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխ. դիրիժոր: Հեղինակ է «Խոսրով և Շիրին» (1942) օպերայի, «Չիտրա» (1960) բալետի, «Ռաստ» (1949) սիմֆ. մուղամի և այլ գործերի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1951, 1952):

ՆԻՅԱԶԻ Ֆաթեհ (1914–1991), տաջիկ գրող: Տաջիկ. ԽՍՀ ժող. գրող (1986): Հեղինակ է «Տաջիկի վրեժը» (1947) պատմվածքների ժող-ի, «Հավատարմություն» (մաս 1, 2, 1949, 1958), «Մի՛ ասա, որ անտառն ամայի է» (1975) վեպերի:

Տաջիկ. ԽՍՀ Ռուդաքիի անվ. Պետ. մրց. (1977):

ՆԻՅՐԵԳԻՀԱԶԱ, ք. Հունգարիայում, Սաբոլիչ Սատմար մեդիեի վարչ. կենտրոնը: Բն.՝ 118 հզ. (2014):

ՆԻՆԲՈ, ք. Չինաստանի Չժեցզյան պրովինցիայում, նվինգսո (բեռնաշրջանառությունը՝ ավելի քան 424 մլն *տ* և ավելի քան 7 մլն բեռնարկղ) Արևելաչին. ծովի ափին: Բն.՝ 736 հզ. (2010):

ՆԻՆՈՄԻՆԴԱ (մինչև 1991-ը՝ Բոգդանովկա), ք. Ջավախքում (Վրաստանի Սամցխե-Ջավախքի մարզ): Բն.՝ 6,1 հզ. (90 %-ը՝ հայեր, 2014): Հիմնադրել են 1840-ին՝ Ռուսաստանի Տավրիկյան նահանգից արտաբված աղանդավոր. ռուսները (դուխոբորներ):

ՆԻՆՈՇՎԻԼԻ (Ինգորոքվա) Էգնատե Թոմայի (1859–1894), վրացի գրող: Հայտնի է Ն-ու «Ապստամբություն Գուրիայում» (1888–89, հրտ.՝ 1902) պատմավեպը: Հեղինակ է նաև «Գոգիա Ուիշվիլի» (1890, հայ.՝ 1905), «Պալիաստոմիի լիճը» (1891, հայ.՝ 1955), «Հրաման» (1893, հայ.՝ 1903), «Գրագիր Մոսեն» (1894), «Մեր հայրենիքի ասպետը» (1894) և այլ պատմվածքների ու վիպակների:

ՆԻՆՈՍ, Ասորեստանի թագավորության առասպել. հիմնադիրը և ***Նինվե*** ք-ի անվանադիրը հուն. դից-յան մեջ: Համարվել է ***Քրոնոսի*** (երբեմն՝ ***Բելի***) որդին: Մահից հետո իշխանությունը թողել է կնոջը՝ ***Շամիրամին***:

Ըստ Մովսես Խորենացու՝ Ն. Քամյան Ներքրովթ-Բելի սերնդից է, Հայաստանում՝ ***Արամ*** թագավորի ժամանակակիցը: Երկյուղելով վերջինի հզորությունից՝ համաձայնվել է, որ նա կրի «մարգարտյա վարսակալ» և իրեն համարի Երկրորդ միապետն Ասիայում: Գահը լքել և Կրետե է քաշվել՝ Շամիրամի խարդավանքների ու «ախտասեր բարքի» պատճառով:

ՆԻՆՄՅԱՆ ՀՈՒԵՅԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՇՐՋԱՆ, Չինաստանի հս-ում: Տարածքը՝ 60 հզ. *կմ*^{2}, բն.՝ 6,3 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ ***Ինչուան***:

ՆԻՆՎԵ, հնագույն ք. Ասորեստանում (ավերակները՝ Իրաքի Մոսուլ ք-ից ոչ հեռու)՝ Տիգրիս գետի ձախ ափին: Մ. թ. ա. V հզ-ամյակի կեսից՝ բնակատեղի, VIII դ-ի վերջ–VII դ-ում՝ Ասորեստանի մայրաքաղաքը: Մ. թ. ա. 612-ին Ն. կործանել են բաբելա-մար. զորքերը: Հնագիտ. պեղումներով բացվել են մ. թ. ա. VIII–VII դդ-ի պալատներ, արձաններ (թագավոր. գրադարանն ունեցել է 30 հզ-ից ավելի սեպագիր կավե սալիկ) ևն:

ՆԻՇԱՆՅԱՆ Սևան Վաղարշի (ծ. 1956), գրող-ճանապարհորդ, լեզվաբան: Հեղինակ է «Սխալ հանրապետություն» (թուրք., 1994, հրտ.՝ 2008) գրքի, «Index Anatulucus» (թուրք., 2010) փաստաթղթերի ժող-ի, որտեղ ներկայացրել է թուրքացման քաղ-յան հետևանքով ավելի քան 16000 անվանափոխված տեղանուններ (2011-ից՝ առցանց, ընդգրկում է 56000 քարտեզագրված տեղանուն):

2014-ին թուրք. իշխանությունները ձերբակալել են Ն-ին՝ պետության պահպանության տակ գտնվող տարածքում շինություն կառուցելու և մահմեդականների կրոն. զգացմունքները ոտնահարելու մեղադրանքով ու դատապարտվել 16 տարի 7 ամիս ժամկետով: 2017-ի հուլիսին փախել է բանտից, անցել Հունաստան:

ՆԻՇԻՆԱ, Ուոշիո (1890–1951), ճապոնացի ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են ատոմ. և միջուկ., տարր. մասնիկների ֆիզիկային: Ստացել է (1929) էլեկտրոնից ֆոտոնների ցրման կտրվածքի բանաձև: Ն-ի ղեկավարությամբ կառուցվել է (1937) ճապոն. առաջին ***ցիկլոտրոնը***:

ՆԻՇԻՋԻՄԱ (Նիսիձիմա) Կացուհիկո (1926–2009), ճապոնացի ֆիզիկոս: ՌԳԱ արտ. անդամ (1982): Աշխ-ները վերաբերում են դաշտի քվանտ. տեսությանը և տարր. մասնիկների ֆիզիկային: Ներմուծել է (1953, Մ. ***Գել-Մանից*** անկախ) ***պարօրինակություն*** հասկացությունը և բացահայտել նրա պահպանության օրենքը: Կանխատեսել է (1957) 2 տեսակի նեյտրինոյի գոյությունը:

ՆԻՇՏԱԴՏԻ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ 1721, կնքվել է Ռուսաստանի և Շվեդիայի միջև Նիշտադտ (Ֆինլանդիա) ք-ում ***Հյուսիսային պատերազմից*** (1700–21) հետո: Շվեդիան ճանաչել է Լիֆլանդիայի, Էստլանդիայի, Ինգերմանլանդիայի, Կարելիայի մի մասի և այլ տարածքների վերամիավորումը Ռուսաստանին: Ռուսաստանը պարտավորվել է Շվեդիային վճարել դրամ. հատուցում և վերադարձնել Ֆինլանդիան:

ՆԻՈԲԱ, Նիոբեա, ***Տանտալոսի*** դուստրը հուն. դից-յան մեջ, Թեբեի արքա Ամֆիոնի կինը: Ն., հպարտանալով բազմազավակությամբ (12, 14 կամ 20 երեխա), վիրավորել է ***Լատոյին***՝ ***Ապոլոնի*** և ***Արտեմիսի*** մորը, որի համար նրանք նետահարել են Ն-ի բոլոր զավակներին: Ն. վշտից քարացել է:

ՆԻՈԲԻՈՒՄ (Niobium), Nb, տարրերի պարբեր. համակարգի V խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 41, ա. զ.՝ 92,9064: Կոչվել է հինհուն. դից. Տանտալոսի դուստր ***Նիոբայի*** անունով (հատկություններով տանտալին նման լինելու պատճառով): Հանդիպում է տանտալի, հազվագյուտ հող. և այլ տարրերի հետ: Կարևոր միներալներն են կոլումբիտը, պիրոքլորը և լոպարիտը: Ն. բաց մոխրագույն արծաթափայլ ցնդվրահալ մետաղ է. խտ.՝ 8,57 *գ/սմ*^{3}, $t_{հալ.}$՝ 2477°C: Քիմիապես կայուն է: Կիրառվում է ինքնաթիռա-, հրթիռաշինության մեջ, տիեզ. ռադիոտեխնիկայում, էլեկտրոնիկայում, քիմ. սարքաշինության մեջ: Ն-ի՝ Zr-ի, Ti-ի հետ համաձուլվածքներից և Nb_3Sn-ից ու Nb_3Ge-ից պատրաստում են գերհաղորդիչ սոլենոիդներ:

ՆԻՍ (Nice), **Նիցցա**, միջերկրածով. ք-նվինգստ Ֆրանսիայի հվ-ում: Մերձծով. Ալպեր դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 352 հզ. (2007): Լազուր ափի գլխ. առողջավայրն է: Ունի միջազգ. օդանավակայան, թեթև, սննդի արդ-յուն, համալսարան: Գործում են Ա. Մատիսի և Մ. Շագալի թանգարանները:

Ն-ի հայկ. համայնքը ձևավորվել է XIX դ-ի վերջ–XX դ-ի սկզբին: Նկատելիորեն ստվարացել է վերջին 2 տասնամյակում (շուրջ 5 հզ., 2010): Գործում են Սբ Աստվածածին եկեղեցին, Նիսի հայ տիկնանց, Հայ մարզ. և այլ միություններ, «Պարսամյան» մշակութ. և կրթ. համալիրը, 1 ամենօրյա և 1 կիրակնօրյա վարժարաններ: Ն-ի կենտրոնում կա հայկ. այգի, տեղադրված է Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված խաչքար:

ՆԻՍԱ ԼՈՒԺԻՑԿԱ, Նեյսե (լեհ.՝ Nysa Luzycka, գերմ.՝ Neiße), գետ Լեհաստանի և Գերմանիայի սահմանին (ակունքը Չեխիայում է), Օդրայի ձախ վտակը: Երկ.՝ 252 *կմ*, ավազանը՝ 4,3 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 32 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է ստորին հոսանքում:

«ՆԻՍԻ ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ», ազգ., հաս., մշակութ. հանդես [2001–11, Նիս (Ֆրանսիա)]: Համանուն միության հրտ-յուն: Խմբ.՝ Շաքե Հակոբյան-Քլոսեն:

ՆԻՍԻՆՈՄԻԱ, ք. Ճապոնիայի Հոնսյու կղզում, Օսակայի արվարձանը: Բն.՝ 481 հզ. (2010):

ՆԻՍԼ (Nissl) Ֆրանց (1860–1919), գերմանացի նյարդաբան և հոգեբույժ: Առաջարկել է (1894) նյարդ. հյուսվածքի ներկման մեթոդ, նկարագրել նյարդ. բջիջների և նրանց բաղադրիչների տարատեսակությունը, նյարդ. բջիջների ախտաբան. փոփոխությունները, նյարդասիֆիլիսի դրսևորման ձևը, որը կոչվում է իր անունով:

ՆԻՄԿԻ Գեորգի Գրիգորևիչ (1903–1987), ռուս. գեղանկարիչ: ՌԽՖՍՀ ժող. նկարիչ (1965): ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի անդամ (1958): Հեղինակ է դինամիկ ոիթմով, դեկորատիվ-ընդհանրացված բնանկարների («Մերձմոսկովյան ճակատամերձ ուղի», 1957, ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ՆԻՎԱ, գետ Կոլայի թ–կղզում: Երկ.՝ 36 *կմ*, ավազանը՝ 12,8 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 165 *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Իմանդրա լճից և թափվում Սպիտակ ծով: Լաստարկելի է:

«ՆԻՎԱ» («Нива» – «Ասպարեզ»), ռուս. գր-գեղ., գիտահանրամատչելի հանդես

(1870–1918, Ս. Պետերբուրգ)։ Խմբ–հրտ.՝ Ա. Ֆ. Մարքս։ 1894–1916–ին լույս է ընծայել «Ամենամյա գրական հավելված», տպագրել է անվանի գրողների երկերի ժող–ները։

ՆԻՎԱԼԱՅԻՆ ԿԼԻՄԱ, ձյունամերձ կլիմա, կլիմաների երկրոր. դասակարգման մեջ բարձր լայն–յունների կամ բարձրլեռն. կլիմա։ Ն. կ–ի պայմաններում առաջանում են սառցադաշտեր և ձնաբձեր։

ՆԻՎԽԵՐ (ինքնանվանումը՝ նիվխ), ժողդ ՌԴ–ում (Խաբարովսկի երկրամաս, Սախալին կղզի)։ Ընդհ. թիվը՝ 5,2 հզ. (2002)։ Լեզուն՝ նիվխերեն։ Հավատացյալներն ուղղափառ քրիստոնյա են, մի մասը պահպանում է ավանդ. հավատալիքները։

ՆԻՎԽԵՐԵՆ, գիլյակերեն, ծագումնաբանորեն մեկուսացած լեզու։ Պատկանում է հնասիական լեզուներին։ Գրի հիմքում՝ լատ. (1931–40), ապա ռուս. (1940–ից) այբուբենն է։

ՆԻՏՇ (Nitsch) Կազիմեժ (1874–1958), լեհ լեզվաբան–սլավոնագետ։ Լեհաստանի ԳԱ նախագահ (1946–52), փոխնախագահ (1952–ից)։ ԽՍՀՄ ԳԱ արտ. թղթ. անդամ (1947)։ Հեղինակ է լեհ–ի պատմությանը, բարբառագիտ–յանը, բառագիտ–յանը, ազգագրությանը վերաբերող աշխ–ների։ «Լեհերենի խոսվածքների փոքր քարտեզ»–ի (հ. 1, 2, 1957, 1959) գլխ. խմբ.։

ՆԻՏՐ..., **նիտրա...** (հուն՝ nitron, սկզբնապես՝ բնական սոդա, այնուհետև՝ բորակ), բարդ բառերի սկզբնամաս. նշանակում է ազոտին վերաբերող (նոր լատ.՝ nitrogenium), օր.՝ ***նիտրալոյ, նիտրամիացություններ***։

ՆԻՏՐԱՄՈՖՈՍԿԱ, եռակի՝ ազոտ–ֆոսֆոր–կալիումական համալիր. պարարտանյութ՝ տարբեր հողերում մշակվող տարբեր գղտ. մշակաբույսերի համար։ Պարունակում է 50–54 % N, P_2OAs և K_2O։ Լուծվում է ջրում։ Օգտագործվում է բոլոր տիպերի հողերում՝ որպես հիմն. և լրացուցիչ պարարտանյութ։

ՆԻՏՐԱԼՈՅ (< ***նիտրա...*** և անգլ.՝ alloy – համաձուլվածք), նիտրիդառաջացնող տարրեր (ալյումինում, քրոմ, մոլիբդեն, վոլֆրամ) պարունակող կառուցվածք. պողպատ։ Մակերևութ. ազոտացված շերտն ունի մեծ ամրություն և մաշակայունություն։

ՆԻՏՐԱՄԵԹԱՆ, CH_3NO_2, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 101,2°C։ Էսթերաթաղանթանյութ. լաքերի, վինիլ. պոլիմերների, որոշ պայթուցիկ նյութերի լուծիչ է։

ՆԻՏՐԱՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, օրգ. միացություններ, որոնք պարունակում են ածխածնի ատոմի հետ կապված մեկ կամ մի քանի նիտրախմբեր (NO_2)։ Տարբերում են միա–, երկ–, եռ– և բազմա– Ն.։ Ն–ի ռեակցիոնունակությունը պայմանավորված է նիտրախմբի՝ փոխարկումների ենթարկվելու հակումով և մոլ–ում այլ ռեակցիոնունակ խմբերի հետ նրա փոխազդեցությամբ։

ՆԻՏՐԱՆԵՐԿԵՐ, **նիտրոարծններ, նիտրոէմալներ**, ներկվող մակերևույթի վրա փայլուն, անփայլ, չեչոտ, ճաքճքված և այլ գեղազարդիչ գունավոր կամ սպիտակ թաղանթներ առաջացնող ներկեր։ Ն. գունանյութերի կախույթներ են նիտրոլաքերում։ Օգտագործվում են մետաղների (ավտոմեքենա, հաստոց, սարքեր) և փայտի (խոհանոց. և բժշկ. կահույք), գործվածքների և կաշվի ներկման համար։

ՆԻՏՐԱՏՆԵՐ, ազոտական թթվի աղերը և էսթերները։ Աղերը (բորակներ)՝ մետաղների և ամոնիումի Ն., բյուրեղ. նյութեր են, պարարտանյութեր, խածատանյութ ներկման ժամանակ, պայթուցիկ նյութերի բաղադրիչներ։ Ալկալ. և հողալկալ. մետաղների, ամոնիումի Ն. (սելիտրաներ), որոնք օգտագործվում են որպես պարարտանյութ, ոչ ճիշտ օգտագործելիս կուտակվում են գղտ. մթերքներում և կարող են հանգեցնել մարդկանց ու կենդանիների թունավորման։ Էսթերները՝ օրգ. միացությունների Ն., անգույն կամ բաց դեղնավուն, հաճելի հոտով հեղուկներ են։ Մի քանի – ONO_2 խումբ պարունակող էսթերները, օր.՝ նիտրոգլիցերինը, օգտագործում են որպես պայթուցիկ նյութ և դեղամիջոց։

ՆԻՏՐԱՑՆՈՂ ԽԱՌՆՈՒՐԴ, խիտ ազոտական թթվի կամ ազոտի օքսիդների խառնուրդն անօրգ. (H_2SO_4, BF_3, $AlCl_3$ ևն) կամ օրգ. (օր.՝ քացախաթթվի անհիդրիդի) նյութերի հետ։ Օգտագործվում է օրգ. միացությունների նիտրացման համար։

ՆԻՏՐԻԴՆԵՐ, ազոտի միացություններն ավելի էլեկտրադրական տարրերի, հիմնականում՝ մետաղների հետ։ Ալյումինի, բորի, սիլիցիումի, վոլֆրամի, տիտանի (AlN, BN, Si_3N_4, W_2N, TiN) և այլ Ն. քիմիապես չափազանց կայուն, դժվարահալ, ջերմակայուն, դիէլեկտրիկ կամ կիսահաղորդչային հատկություններով բյուրեղ. նյութեր են։ Կրակադիմացկուն համաձուլվածքների բաղադրամաս են, կիրառվում են կիսահաղորդչային սարքերում։ Որոշ մետաղանման Ն. (NbN, MoN) գերհաղորդիչներ են։ Մետաղներն ազոտի կամ ամոնիակի առկայությամբ տաքացնելիս (500–900°C) պատվում են Ն–ի շերտով, դառնում կարծր, կոռոզիա– և մաշակայուն։

ՆԻՏՐԻԼՆԵՐ, կարբոնաթթուների ցիանական միացություններ՝ R–CN, ցիանաջրածնական թթվի օրգ. ածանցյալներն են։ Ստացվում են կարբոնաթթվի ամիդից կամ ամոնիումային աղից ջուր պոկելով և կամ ալկիլհալոգենիդի ու KCN–ի փոխազդեցությամբ։ Ն. բազմաթիվ օրգ. նյութերի ստացման ելանյութեր են։ Կիրառում են սինթետիկ մանրաթելերի (տես ***Ակրիլանիտրիլ, Ացետոնիտրիլ***), կաուչուկների, պլաստմասսաների արտադր–յան մեջ, օրգ. սինթեզում և որպես լուծիչներ։ Ն–ի իզոմերները (R–N^+C^-) կոչվում են **իզոնիտրիլներ**։

ՆԻՏՐԻՏՆԵՐ, ազոտային թթվի աղերը և էսթերները։ Աղերը՝ մետաղների և ամոնիումի Ն., անգույն բյուրեղ. նյութեր են, իսկ էսթերները՝ օրգ. միացությունների Ն., անգույն կամ բաց դեղնավուն, հաճելի հոտով հեղուկներ են։ Ն. հիմնականում օգտագործում են ազոներկանյութերի արտադր–յան, բժշկության, աննդի արդ–յան մեջ։

ՆԻՏՐԻՖԻԿԱՑՆՈՂ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐ, **նիտրոզաբակտերիաներ**, ամոնիակը և ամոնիումային աղերը փոխարկում են ազոտական թթվի աղերի՝ ***նիտրատների***։ Կան հողում և ջրամբարներում։

ՆԻՏՐԻՖԻԿԱՑՈՒՄ (< ***նիտր...*** և լատ.՝ facere – կատարել), **նիտրացում**, ***նիտրիֆիկացնող բակտերիաների*** միջոցով հողում, ջրամբարներում պարունակվող ամոնիումային աղերի փոխարկումը բույսերի կողմից յուրացվող նիտրատների։ Ն–ով ավարտվում է ամոնիֆիկացումով սկսվող ազոտի օրգ. միացությունների հանքայնացումը։ Հողի լավ մշակումը բարելավում է օդավորումը և նպաստում Ն–մանը։

ՆԻՏՐՈԲԵՆԶՈԼ, $C_6H_5NO_2$, դեղնավուն յուղանման հեղուկ, $t_{եռ.}$՝ 210,9°C։ Կիրառվում է անիլին, բենզիդին ստանալու համար, ներկանյութերի արտադր–յան մեջ, որպես լուծիչ և օքսիդիչ ևն։

ՆԻՏՐՈԳԼԻԿՈԼ, **էթիլենգլիկոլերկնիտրատ**, $O_2NOCH_2–CH_2ONO_2$, էթիլենգլիկոլի և ազոտական թթվի էսթերը, պայթուցիկ նյութ է։ Անգույն, յուղանման, ցնդող հեղուկ է։ Թունավոր է, օգտագործվում է նիտրոգլիցերինին. պայթուցիկ նյութերի հետ, հրթիռ. պինդ վառելանյութերում՝ որպես պլաստիֆիկարար։ Զգայուն է հարվածի, շփման, կրակի, կայծի հանդեպ։ Պայթման ջերմությունը՝ 6,8 *ՄՋ/կգ* (1650 *կկալ/կգ* ջերմություն)։

ՆԻՏՐՈԳԼԻՑԵՐԻՆ, գլիցերինեռնիտրատ, $CH_2ONO_2–CHONO_2–CH_2ONO_2$, գլիցերինի և ազոտական թթվի լրիվ էսթեր, պայթուցիկ նյութ է։ Անգույն, յուղանման հեղուկ։ Պայթում է նույնիսկ թույլ հարվածից, պայթման ջերմությունը՝ 6,3 *ՄՋ/կգ* (1500 *կկալ/կգ*)։ Օգտագործվում է պայթուցիկ նյութերի, ուժանակների և անձուխ վառոդների արտադր–յան մեջ, բժշկության մեջ՝ որպես անոթալայնիչ դեղամիջոց (սպիրտ. լուծույթ և հաբեր)։ Վերացնում է կրծքային հեղձուկի նոպաները։

ՆԻՏՐՈԶԱՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, օրգ. միացություններ, պարունակում են ածխածնի ատոմին միացած նիտրոզախումբ (NO)։ Բազմաթիվ Ն. առաջացնում են դիմերներ, որոնք հալելիս, թորելիս կամ լուծելիս վերածվում են մոնոմերների։ Խիստ ռեակցիոնունակ են։ Ուժեղ օքսիդիչների հետ առաջացնում են նիտրամիացություններ, վերականգնիչների հետ՝ ամիններ կամ հիդրօքսիլամիններ։ Արոմատիկ Ն. օրգ. սինթեզի ելանյութեր են, օգտագործում են նաև որպես ներկանյութեր։

ՆԻՏՐՈԼԱՔԵՐ, թաղանթանյութի նիտրատներ (սովորաբար՝ կոլօքսիլին) պարունակող լաքեր։ Ն–ի համար լուծիչներ են կետոնները, ացետատները, սպիրտները և նրանց խառնուրդները։ Հաճախ ավելացնում են նաև կպչունականությունը մեծացնող, թաղանթ առաջացնող նյութեր։ Մակերևույթին քսված Ն–ից առաջանում է թափանցիկ ծածկաթաղանթ։

ՆԻՏՐՈՖԻԼ ԲՈՒՅՍԵՐ (< ***նիտր...*** և հուն.՝ phileo – սիրել), բույսեր, որոնք աճում և պտղաբերում են նիտրատների բարձր պարունակությամբ հողերում (օր.՝ ցորեն, վուշ, արևածաղիկ, որոշ ջրիմուռներ ևն)։

ՆԻՏՐՈՖՈՍ, մինչև 3–46 % N և P_2O_5 պարունակող պարարտանյութ։ Ջրում լուծելի է։ Օգտագործվում է բոլոր տիպերի հողերում՝ որպես հիմն. պարարտանյութ։

ՆԻՏՐՈՖՈՍԿԱ, 33 %–ից ավելի N, P_2O_5 և K_2O պարունակող պարարտանյութ։ Ջրում լուծելի է։ Թողարկվում է հատիկների ձևով, համապիտանի օգտագործման պարարտանյութ է։

ՆԻՑՅԵ (Nitze) Մաքս (1848–1906), գերմանացի բժիշկ, ընդերադիտման և ուրոլոգիայի հիմնադիրներից։ Աշակել է (1877–79) միզապարկադիտման մեթոդ՝ միզապարկադիտակի (ցիստոսկոպ) միջոցով։ Հեղինակ է միզապարկադիտման ձեռնարկի (1889) և ատլասի (1894)։

ՆԻՐԱՆԻ (**Հովհաննես**, 1822–մ. թ. անհտ), աշուղ։ 1835–ից հորինել է հայ. և թուրք. երգեր, կատարել սազի, ապա՝ ***չոնգուրի*** նվագակցությամբ։ Ն–ի հայ. որոշ երգեր գեղեցված են Մ. Միանսարյանի «Քնար հայկական» (1868) և Գ. Ախվերդյանի «Հայ աշուղներ» (1903) ժող–ներում։

ՆԻՐԵՆԲԵՐԳ (Nirenberg) Մարշալ Ուորրեն (1927–2010), ամերիկացի կենսաքիմիկոս։

Հիմնարար աշխ-ները վերաբերում են գենետիկ. կողի վերծանմանը: Նոբելյան մրց. (1968, Ռ. Ուև. *Հոլլիի* և Հ. Գ. *Տոդանայի* հետ):

ՆԻՐՎԱՆԱ (սանսկրիտ՝ nirvana – անշնչություն, մարում), *բուդդայականության* և *ջայնիզմի* առանցք. հասկացությունը, որը ցույց է տալիս մարդու հոգևոր ձգտման բարձրագույն վիճակն ու նպատակը: Բուդդայականության մեջ Ն. ներքին կեցության լիության հոգեվիճակ է, ցանկությունների բացակայության, բացարձակ բավարարվածության և ինքնաբավության, արտաքին աշխարհից բացարձակ մեկուսացման վիճակ: Բուդդայականության զարգացմանը զուգընթաց Ն-ի բարոյահոգեբ. ըմբռնման հետ ծագել է նաև նրա՝ որպես բացարձակի մասին պատկերացումը: Ջայնիզմում Ն. հոգու կատարյալ վիճակ է, որն ազատ է նյութականի կապանքներից, ծնունդների և մահվան (սանսարա) անվերջանալի խաղից: Ն-ին կարելի է հասնել 5 առաքինությունների (հավատ, արիություն, ուշադրություն, կենտրոնացում, իմաստություն) տևական զարգացմամբ:

ՆԻՑՇԵ (Nietzsche) Ֆրիդրիխ (1844–1900), գերմանացի փիլ.: Կյանքի փիլ-յան ներկայացուցիչ: Կրել է Ա. *Շոպենհաուերի* և Ռ. *Վագների* ազդեցությունը: Ստեղծագործ. կյանքն ընդհատվել է 1889-ին՝ հոգեկան հիվանդության պատճառով: Ն. «Ողբերգության ծնունդը երաժշտության ոգուց» (1872) աշխ-յան մեջ հակադրել է «դիոնիսոսյան» (կենսական–խրախճանքային) և «ապոլոնյան» (հայեցող-կարգավորող) կեցության 2 նախասկիզբները: Փիլ-գեղ. արձակ ժանրի երկերին բնորոշ են մշակույթի անարխիստ. մեկնաբանությունը, քարոզել է ապաբարոյություն («Չարից ու բարուց անդին», 1886), «գերմարդու» մասին առասպելում արտահայտվել է ուժեղ անհատի պաշտամունքը («Այսպես խոսեց Զրադաշտը», 1883–84, «Կամք առ իշխանություն», հրտ.՝ 1889–1901)՝ զուգակցելով «ապազայի մարդու» ռոմանտիկ իդեալով: Հայ իրականության մեջ Ն-ի հայացքներին սուբյեկտիվ իդեալիզմի դիրքերից անդրադարձել է Երվանդ *Ֆրանգյանը* «Ֆրիդրիխ Նիցշե և նրա փիլիսոփայությունը» աշխ-յան մեջ (1910):

ՆԻՔՈԼՍ (Nichols) Մայք (Միխայիլ Իգոր Պեշկովսկի, 1931–2014), ամերիկացի հրեա ռեժ.: Նկարահանել է «Ո՞վ է վախենում Վիրջինիա Վուլֆից» (1966), «Շրջանավարտը» (1967), «Բացիկներ անդունդի եզրից» (1990), «Վանդակ թռչունների համար» (1996), «Մտերմություն» (2004) և այլ ֆիլմեր:

ՆԻՔՈԼՍՈՆ Ջեկ (ծ. 1937), ամերիկացի կինոդերասան, ռեժ., պրոդյուսեր (ծագումով՝ հրեա): 1970-ական թթ-ի սկզբներից մարմնավորած խռովարար, հաս-յան տրամադրություններին համահունչ հերոսներով Ն. ճանաչվել է ամերիկ. կինոյի առաջատար դերասաններից («Հինգ թեթև պիեսներ», «Թռիչք կկվի բնի վրայով», «Քաքշանքի խոսքեր», «Բեթմեն», «Գայլը», «Ինչպես իմանալ», «Ցանկությունների ցուցակ», «Մաքսի» ևն): Նկարահանել է «Գնա՝ ասաց նա» (1971), «Ուղևորվելով հարավ» (1978), «Երկու Ջեյք» (1990) ֆիլմերը: «Օսկար» (1976, 1984, 1998) մրց.:

ՆԻՔՍՈՆ (Nixon) Ռիչարդ Միլհաուս (1913–1994), ԱՄՆ 37-րդ նախագահը՝ 1969–74-ին՝ Հանրապետ. կուս-յունից: 1953–61-ին՝ փոխնախագահ: 1973-ին Ն-ի կառ-յունն ստորագրել է համաձայնագիր Վիետնամում ռազմ. գործողությունները դադարեցնելու և խաղաղությունը վերականգնելու վերաբերյալ: 1972-ից մասնակցել է խորհրդա-ամերիկ. հանդիպումներին: Պաշտոնաթող է եղել «Ուոթըրգեյթյան գործի» մասնակցության մեղադրանքով:

ՆԻՔՐՈՄ (նիկել և քրոմ), նիկելի (հիմքը) համաձուլվածքը քրոմի (15–30 %) հետ՝ լեգիրված սիլիցիումով (մինչև 1,5 %), ալյումինով (մինչև 3,5 %), հազվագյուտ տարրերի միկրոհավելումներով: Ցեռնիքրոմում նիկելի մի մասը փոխարինված է երկաթով (20 %-ից ավելի): Ունի բարձր կրակադիմացկունություն և տեսակարար էլ. դիմադրություն: Օգտագործում են էլ. վառարանների և սարքերի տաքացնող մասերը պատրաստելու համար: Առլգն աշխ. ջերմաստիճանը՝ 1200°C:

ՆՂԲՅԱՆՆԵՐ, իշխան. և թագավոր. տոհմ Կիլիկյան Հայաստանում: Սերել են Հեթումյան արքայատան հետ խնամիացած Բարձրբերդի իշխան. տնից: Եղել են Ճկեր գվո-ի Նղր բերդի տերը (այստեղից էլ՝ տոհմանունը): Առաջին Ն-ից հիշվում է Կոստանդին իշխանը (ծ. թ. անհտ–1308): Նրա որդիներից Հեթումն Օշին թագավորի օրոք (1308–20) նշանակվել է արքունի ատենապետ, ապա՝ ջամբոլա (հազարապետ), Բաղդինը 1329–36-ին վարել է *մարաջախտության* գործակալությունը: Ն-ից Կոստանդինին իշխանների խորհուրդը 1345-ին հռչակել է թագավոր (տես *Կոստանդին Դ*), որին հաջորդել է Կոստանդին Ե-ն: Կիլիկիայի հայոց թագավորության անկումից հետո Ն-ի մասին տեղեկություններ չեն հանդիպում:

ՆՄԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ բազմանդամի, միանդամներ՝ բազմանդամի կազմում, որոնք միմյանցից տարբերվում են (կամ չեն տարբերվում) միայն գործակիցներով կամ նշաններով, օր.՝ $5a^3b$ և $3a^3b$: Ն. ա. կարող են փոխարինվել դրանց հանրահաշվ. գումարին հավասար $8a^3b$ միանդամով (բերված Ն. ա.):


ՆՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, նմանության ձևափոխություն, հարթության կամ տարածության ձևափոխություն, որի դեպքում յուրաքանչյուր M կետին համապատասխանության մեջ է դրվում OM-ի վրա M′ կետ, որտեղ O-ն սևեռված կետ է, ընդորում՝ OM′: OM = k (Ն-ի գործակից) նույնն է O-ից տարբեր բոլոր M կետերի համար: Ն-յան դեպքում յուրաքանչյուր պատկեր փոխարկվում է նման պատկերի:

ՆՄԱՆԱԿԱՅԻՆ (ԱՆԱԼՈԳԱՅԻՆ) ՀԱՇՎԻՉ ՄԵՔԵՆԱ. (ՆՀՄ), մշակում է անընդհատ (անալոգային) տեսքով տրված տեղեկույթը: Սկզբն. առնչություններում եղած մեծության (մաթ. փոփոխականի) յուրաքանչյուր արժեքին համապատասխանեցվում է նրա նմանակի արժեքը՝ հաճախ ֆիզ. ուրիշ բնույթի այլ մեծություն՝ մեք. փոփոխական: Ըստ ֆիզ. շարժընթացի, որի վրա հիմնված է ՆՀՄ-ի աշխ-ը, տարբերում են մեխ., օդաճնշ., հեղուկ., էլեկտրամեխ. և էլեկտրոն. ՆՀՄ-ներ: Որպես մեք. փոփոխականներ՝ նրանց մեջ օգտագործվում են անկյուն. և գծային տեղափոխությունները, հեղուկ միջավայրի և գազի ճնշումը, էլ. լարումը և հոսանքը:

ՆՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ, 1. փիլ-գեղագիտ. հասկացություն, որի ակունքում անտիկ միմեսիսի մասին ուսմունքն է: Բնորոշում է աշխարհի գեղ. ընկալումը (բնության նմանակումը որպես նախն. ձևերի, էյդոսների իրականացում): Հատկապես տարածվել է Վերածննդի գեղագիտյան և XVII–XVIII դդ-ի կլասիցիզմի մեջ: 2. Հոգեբ-յան մեջ և սոցիոլոգիայում՝ ուրիշների շարժումների, գործողությունների պատճենում, վարքի ու գործունեության նոր ձևերի յուրացման միջոց:

ՆՄԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ, հատուկ են այնպիսի ֆիզ. շարժընթացների, որոնցում այլ մեծությունների (արգումենտների) ֆունկցիաներ հանդիսացող այդ շարժընթացներին բնորոշ ֆիզ. մեծությունները կախված են արգումենտներից ոչ թե առանձին-առանձին, այլ դրանց որոշակի համակցություններից (բազմապատկում, հարաբերություն ևն): Ն. օ-ի օրինակ է *Պաշենի օրենքը*:

ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ, F_1 և F_2 երկու պատկերներ կոչվում են նման, եթե նրանց կետերի միջև կարելի է հաստատել այնպիսի փոխմիարժեք համապատասխանություն, որի դեպքում F_1 և F_2 պատկերների կամայական համապատասխան զույգ կետերի միջև եղած հեռությունների հարաբերությունը հավասար է նմանության գործակից կոչված նույն k հաստատունին: Նման պատկերների համապատասխան ուղիղների միջև եղած անկյունները հավասար են (նկ-ում՝ $< B_1A_1C_1 = < B_2A_2C_2$): Տես նաև *Երկրաչափություն*:



ՆՅԱԳԱ. (Neaga) Շտեֆան (Ստեպան Տիմոֆեևիչ, 1900–1951), մոլդավ կոմպոզիտոր, դաշնակահար, դիրիժոր: Մոլդ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1943), ազգ. սիմֆոնիզմի հիմնադիրը («Պոեմ Դնեստրի մասին», 1943): 1947-ից՝ Մոլդովայի ֆիլհարմոնիայի սիմֆ. նվագախմբի դիրիժոր: Հեղինակ է մոլդ. առաջին կանտատների, Մոլդ. ԽՍՀ պետ. օրհներգի երաժշտության, օրատորիաների, ջութակի կոնցերտի, կամեր. երկերի, ռոմանսների, խմբերգերի:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

ՆՅԱՅԱ. (սանսկրիտ՝ nyaya – դատողության կանոն), հինհնդ. փիլ-յան 6 ուղղափառ դպրոցներից: Առաջին անգամ համակարգված շարադրվել է մ. թ. ա. II դ-ում կամ մ. թ. II դ-ում: Ն-ում հիմնականը տրամաբ-յան, իմացաբանության և փիլ. բանավեճի հարցերն են: Ն. մշակել է 5 անդամից բաղկացած *սիլոգիզմ*: Ն. հանդես է եկել բուդդայականության իմացության տեսության սկեպտիցիզմի դեմ (մադհյամիկա):

ՆՅԱՉԱՆԳ (Nha Trang), բ-նվ ինգստ Վիետնամի հս-արլ-ում, Ֆուկհան պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 119 հզ. (2010): Գղտ. առևտր. կենտրոնն է, ծով. առողջավայր:

ՆՅԱՐԴԱԱԽՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, նևրոպաթոլոգիա (< *նեյրո*..., նևրո..., հուն.՝ pathos – ախտ և ...*լոգիա*), *նյարդաբանության* կլինիկ. բաժին. ուսումնասիրում է նյարդ. հիվանդությունների առաջացման պատճառները, դրսևորումները, ընթացքը, մշակում ախտորոշման, բուժման և կանխարգելման մեթոդներ:

ՆՅԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, նևրոլոգիա, բժշկակենսբ. գիտ-յուն նյարդ. համակարգի կառուցվածքի և ֆունկցիաների (բնականոն և ախտաբան. վիճակներում), նրա օրինաչափությունների (ֆիլո- և օնտոգենեզում) մասին: Ձևավորվել է XIX

դ–ում: Ն–յան տես. հիմքը կազմում են նյարդ. համակարգի անատոմիան, ***հյուսվածաբանությունը***, ***սաղմնաբանությունը***, ***նյարդաֆիզիոլոգիան***, ***նյարդախիտաբանությունը*** ևն:

ՆՅԱՐԴԱԲՈՐԲ, **նևրիտ** (հուն.՝ neuron – նյարդ), ծայրամաս. նյարդերի բորբոքում. առաջանում է վարակիչ հիվանդությունների, վնասվածքների, արյան շրջանառության խանգարումների հետևանքով: Դրսևորվում է ցավերով, զգացողության խանգարումներով, լուծանքներով և կիսալուծանքներով:

ՆՅԱՐԴԱՔՋԻՋ, **նեյրոն** (հուն.՝ neuron – նյարդ), նյարդ. համակարգի կառուցվածք. և ֆունկցիոնալ հիմն. միավորը. կազմված է մարմնից և նրանից դուրս եկող ելուստներից (համեմատաբար կարճ դենդրիտներից և երկար աքսոններից):

ՆՅԱՐԴԱԹԵԼԵՐ, նյարդաբջիջների ելուստներ (աքսոններ), որոնք հաղորդում են նյարդ. ազդակները: Երկ–յունը կարող է գերազանցել 1 *մ*, տրամագիծը՝ 0,5–ից 1700 *մկմ*:

ՆՅԱՐԴԱԹՈՒԼՈՒԹՅՈՒՆ, **նևրասթենիա**, նևրոզների խմբի հիվանդություն, որի դեպքում նյարդ. համակարգի թուլությունն արտահայտվում է դյուրագրգռելիությամբ, հոգնածությամբ, աշխատունակության նվազմամբ, անկայուն տրամադրությամբ: Ուղեկցվում է քնի և վեգետատիվ նյարդ. համակարգի ֆունկցիաների խանգարմամբ:

ՆՅԱՐԴԱԿԻԲԵՌՆԵՏԻԿԱ, **նեյրոկիբեռնետիկա**, կենսբ. կիբեռնետիկայի ուղղություն. ուսումնասիրում է օրգանիզմների կառավարման և ինքնակարգավորման, նաև նյարդ. համակարգում տեղեկույթի պահպանման, վերամշակման և հաղորդման ընդհ. օրինաչափությունները: Հիմն. խնդիրները կապված են նշված օրինաչափությունների մաթ. նկարագրման և դրա հիման վրա նեյրոնի, նեյրոն. խմբերի և նյարդ. համակարգի այլ բաժինների մոդելների կառուցման հետ:

ՆՅԱՐԴԱՀՈՐՄՈՆՆԵՐ, **նեյրոհորմոններ**, կենսաբանորեն ակտիվ նյութեր, որոնք արտադրվում են նյարդաներզատ. բջիջներում և կարգավորում ներզատ. գեղձերի և ԿՆՀ–ի գործունեությունը: Ն. են վազոպրեսինը, օքսիտոցինը, ռիլիզինգ–հորմոնները, ադրենալինը ևն: Կարգավորում են ներքին օրգանների (այդ թվում՝ ներզատիչ գեղձերի) և ԿՆՀ–ի գործունեությունը: Քիմ. բնույթով պեպտիդներ են, որոշները՝ կատեխոլամիններ:

ՆՅԱՐԴԱՀՈՒՄՈՐԱԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ, նյարդ. համակարգի և հումորալ գործոնների (*հորմոններ*) համատեղ կարգավորող, համաձայնեցնող և ամրողջականացնող ազդեցությունը մարդու և կենդանիների օրգանների, հյուսվածքների ու ֆիզիոլոգ. կենսընթացների վրա: Կարևոր դեր է կատարում օրգանիզմի ներքին միջավայրի հարաբեր. հաստատուն վիճակի՝ հոմեոստազի պահպանման և միջավայրի փոփոխվող պայմաններին հարմարվելու ընթացքում: Ն. կ–ման բարձրագույն բաժինները տեղադրված են ենթատեսաթմբում (հիպոթալամուս):

ՆՅԱՐԴԱՄԱՇԿԱԲՈՐԲ, **նեյրոդերմիտ** (< ***նեյրո***... և հուն.՝ derma – մաշկ), մաշկի նյարդաալերգ. հիվանդություն: Դրսևորվում է ուժեղ քորով, ախտահարման օջախում առաջանում է կոշտություն, հանգուցավոր ցանավորում, թեփոտում:

ՆՅԱՐԴԱՅԻՆ ԱՆՈՒԵՔՄԻԱ, հիվանդագին վիճակ. առաջանում է արբունքի շրջանում (գրեթե բացառապես աղջիկների մոտ), բնորոշվում է նիհարելու նպատակով սննդի ընդունման երկարատև սահմանափակմամբ, խորացող հյուծումով և տարբեր խանգարումներով: Բացատրվում է նիհարելու ձգտումով և ավելորդ գիրության հանդեպ վախով: Երբեմն Ն. ա. ուղեկցվում է ***բուլիմիայի*** (անհագ քաղցի զգացում) նոպաներով: Պատճառները կարող են լինել հոգեսոցիալ. անբարենպաստ ազդեցությունները, ժառանգ. գործոնները, նյութափոխանակության խանգարումները: Բուժումը՝ հոգեբուժ., սննդակարգ, հակաընկճումային դեղանյութեր ևն:

ՆՅԱՐԴԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ, նյարդաբջիջների (նեյրոններ) ամբողջություն, այլ նյարդ. կենտրոնների ֆունկցիան կարգավորող կամ կատարող օրգան: Պարզագույն Ն. կ. կազմված է մի քանի ***նեյրոններից***, որոնք ձևավորում են նյարդահանգույց (գանգլիոն): Մարդու և բարձրակարգ կենդանիների Ն. կ. ընդգրկում է հազարավոր և նույնիսկ միլիոնավոր նեյրոններ:

ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ, մարդու և կենդանիների մոտ գոյացությունների (ընկալիչներ, նյարդեր, նյարդահանգույցներ, ուղեղ) ամբողջություն. իրականացնում է օրգանիզմի վրա ազդող գրգռիչների ընկալումը, նման դեպքում ծագող դրդման հաղորդումն ու մշակումը, պատասխան հարմարվող. ռեակցիաների ձևավորումը: Կարգավորում և համակարգում է օրգանիզմի՝ միջավայրի հետ փոխազդեցության բոլոր ֆունկցիաները:

ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԻՊԵՐ, մարդու և կենդանիների բարձրագույն նյարդ. գործունեության անհատ. առանձնահատկությունների ամբողջություն, որոնք տարբերվում են գլխուղեղի կեղևում դրդման և արգելակման կենսընթացների ուժով, հավասարակշռությամբ ու շարժունությամբ: Ի. Պ. Պավլովն առանձնացրել է նյարդ. համակարգի 4 տիպ. ուժեղ չհավասարակշռված (համապատասխանում է խոլերիկ խառնվածքին), ուժեղ հավասարակշռված իներտ (ֆլեգմատիկ), ուժեղ հավասարակշռված շարժուն (սանգվինիկ), թույլ (մելանխոլիկ):

ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, նյարդ. համակարգի հիվանդություններ, որոնք պայմանավորված են օրգ. խանութ., վնասվածք., թունային ևն կամ ֆունկցիոնալ (նևրոտիկ)] խանգարումներով: Ն. հ–ի ծագումը կարող է պայմանավորված լինել գենետիկ. գործոններով: Դրսևորվում են լուծանքներով, զգացողության և հոգեկան խանգարումներով:

ՆՅԱՐԴԱՅԻՆ ՇԱՐԺԸՆԹԱՑՆԵՐ, ԿՆՀ–ի գործունեությունը պայմանավորող 2 հիմն. շարժընթացների՝ դրդման և արգելակման փոխներգործությունն ու մշտ. համագործակցությունը: **Դրդումը** կենդանի բջջի պատասխան ռեակցիան է միջավայրի արտաքին ու ներքին գործոնների ազդեցությանը, որի ժամանակ կենդանի համակարգը ֆիզիոլոգ. հանգստի վիճակից անցնում է գործողության, ի հայտ են գալիս գործողության պոտենցիալներ, որոնք համապատասխան մեծության հասնելիս հանգեցնում են նյարդ. ազդակի առաջացման: **Արգելակումն** ակտիվ նյարդ. շարժընթաց է, որի ժամանակ դրդումը դառնում է անհնարին, կամ ընկճվում է գլխուղեղի կեղևում արդեն առաջացած դրդման ինտենսիվությունը: Արգելակումը, դրդման հետ միասին, ապահովում է բոլոր օրգանների և ամրողջ. օրգանիզմի բնականոն գործունեությունը, որի խանգարումները հանգեցնում են ***նյարդային հիվանդությունների***:

ՆՅԱՐԴԱՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, կլինիկ. բժշկագիտ–յան բաժին. ուսումնասիրում է նյարդ. համակարգի հիվանդությունները և վնասվածքները, որոնք բուժվում են վիրաբուժ. եղանակներով:

ՆՅԱՐԴԱՎՈՐՈՒՄ, **ինները վացիա** (< լատ. in – մեջ, ներսը և ***նյարդ***), ԿՆՀ–ի հետ օրգանների և հյուսվածքների կապը նյարդերի օգնությամբ: Տարբերում են առբերող (աֆերենտ) կամ կենտրոնաձիգ (օրգաններից և հյուսվածքներից դեպի ԿՆՀ) և արտատար կամ կենտրոնախույս (ԿՆՀ–ից դեպի օրգաններն ու հյուսվածքները) Ն–ներ:

ՆՅԱՐԴԱՐՄԱՏԱԲՈՐԲ, **ռադիկուլիտ** (լատ.՝ radicula – արմատիկ), ծայրամաս. նյարդ. համակարգի հիվանդություն. առաջանում է ողնուղեղ. նյարդարմատների ախտահարման հետևանքով, հիմնականում՝ միջողնային սկավառակների օստեոխոնդրոզի ժամանակ: Բնորոշվում է ցավերով, մեջքի մկանների լարվածությամբ, շարժողության խանգարումներով ևն:

ՆՅԱՐԴԵՐ, **նևրվեր** (լատ.՝ nervus – ջիղ, նյարդ), նյարդանման հյուսածքի թելանման խրձեր, որոնք գլխուղեղը, ողնուղեղը և նյարդ. հանգույցները կապում են օրգանիզմի տարբեր օրգանների ու հյուսվածքների հետ: Ն–ի ամբողջությունը ձևավորում է ծայրամաս. նյարդ. համակարգը: Մարդու գլխուղեղից դուրս են գալիս 12 զույգ նյարդեր, ողնուղեղից՝ 31 զույգ, հատուկ խումբ են կազմում նյարդահանգույցներից, նյարդաբներից և վեգետատիվ նյարդ. համակարգի հյուսակներից սկիզբ առնող Ն.:

ՆՅԱՐԴՈՒՈՒՑՔ, **նևրոմա**, հավաքական հասկացություն՝ նյարդ. համակարգի տարբեր ուռուցքները նշելու համար՝ նևրինոմաներ (նյարդաբների թաղանթի բջիջներից առաջացած բարորակ ուռուցք), նևրոլաստոմաներ (սիմպաթիկ նյարդահանգույցներից և այլ բջիջներից առաջացած չարորակ ուռուցքներ), նևրոֆիբրոմատոզ ևն:

ՆՅԵՎԱ (Nievo) Իպպոլիտո (1831–1861), իտալացի բանաստեղծ, գարիբալդիական: Հեղինակ է հայրենասիր. բանաստեղծությունների, «Սպարտակ» (1856), «Կապուի բնակիչները» (1857) պատմ. ողբերգությունների, ազգ–ազատագր. շարժմանը վերաբերող «Իտալացու խոստովանությունը» (1858) վեպի:

ՆՅՈՒԹԵՐ (Noether) Էմմի (1882–1935), գերմանացի մաթեմատիկոս: 1933–ից՝ ԱՄՆ–ում: Ն–ի հանրահաշվին վերաբերող աշխատները նպաստել են նոր ուղղության՝ ընդհ. հանրահաշվի ստեղծմանը: Ձևակերպել է (1918) տես. ֆիզիկայի հիմնարար, իր անվամբ կոչված ***Նյութերի թեորեմը***:

ՆՅՈՒԹԵՐԻ ԹԵՈՐԵՄ, կապ է հաստատում ֆիզ. համակարգի համաչափության հատկությունների և պահպանման օրենքների միջև: Եթե համակարգի հատկությունները չեն փոխվում փոփոխականների որևէ ձևափոխության դեպքում, ապա դրան համապատասխանում է որոշակի ֆիզ. մեծության պահպանումը: Այսպես՝

համակարգի հատկությունների անկախությունը ժամանակի հաշվարկի սկզբի ընտրությունից՝ համապատասխանում է էներգիայի պահպանման օրենքը: Ձևակերպել է (1918) Է. *Նյոթերը*:

ՆՅՈՒ (ֆրանս.՝ nu – մերկ), կերպարվ-ի ժանր, որի պատկերման առարկան մերկ մարմինն է (ձևավորվել է XVII դ-ում): Ն. արտացոլել է մարդու մարմն. գեղեցկության իդեալը: Կնոջ մերկ մարմինը պատկերել են մտերիմ-կենցաղ. պլանով (Ջորջոնե, Տիցիան, Օ. Ռենուար, Պ. Պիկասո, Ա. Մոդիլիանի և ուր.): Հայկ. կերպարվ-ում Ն-ի ժանրին անդրադարձել են Ա. Բաժբեուկ-Մելիքյանը, Է. Իսաբեկյանը, Ե. Քոչարը, Վ. Շաքարյանը, Ռ. Ադալյանը և ուր.:

ՆՅՈՒ ԲՐԱՆՍՈՒԻԿ (New Brunswick), պրովինցիա Կանադայի արլ-ում: Տարածքը՝ 72,2 հզ. *կմ*^{2}, բն.՝ 756 հզ. (2012): Վարչ. կենտրոնը՝ *Ֆրեդերիկտոն*:

ՆՅՈՒ ԴԵԼԻ (New Delhi), **Նոր Դելի**, *Դելհի* ք-ի մասը, որտեղ տեղաբաշխված են կառավար. հիմն. հաստատությունները: Բն.՝ 295 հզ. (2011): Կառուցվել է 1911–23-ին՝ անգլ. գաղութ. վարչակարգի համար:

ՆՅՈՒ ՀԵՄՓՇԻՐ (New Hampshire), նահզ ԱՄՆ հս-արլ-ում: Տարածքը՝ 24,2 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,3 մլն (2011): Վարչ. կենտրոնը՝ *Կոնկորդ*:

ՆՅՈՒ ՀԵՅՎԵՆ (New Haven), ք. ԱՄՆ-ի *Քոնեքթիքութ* նահզ-ում: Բն.՝ 123 հզ. (արվարձաններով՝ ավելի քան 506 հզ., 2010): Ն. Հ-ում է Յեյլի համալսարանը:

ՆՅՈՒ ՄԵՔՍԻԿՈ (New Mexico), նահզ ԱՄՆ-ի արմ-ում: Տարածքը՝ 315 հզ. *կմ*^{2}, բն.՝ 2 մլն (2013): Վարչ. կենտրոնը՝ *Սանտա Ֆե*:

ՆՅՈՒ ՅՈՐՔ (New York), նահզ ԱՄՆ-ի հս-արլ-ում: Տարածքը՝ 128,4 հզ. *կմ*^{2}, բն.՝ 19,7 մլն (2014): Վարչ. կենտրոնը՝ *Օլբանի*:

ՆՅՈՒ ՅՈՐՔ, ք. ԱՄՆ-ի համանուն նահզում՝ Հուդզոնի գետաբերանում, նվինգստ Ատլանտ. օվկ-ի ափին: Բն՝. 8,5 մլն (արվարձաններով՝ ավելի քան 19 մլն, 2010): Հիմնադրել են հոլանդացիները 1626-ին՝ Նոր Ամստերդամ անունով: 1785–90-ին՝ ԱՄՆ-ի մայրաքաղաքը: Երկրի տնտ., ֆին., տրանսպորտ., քաղ. և մշակութ. կարևորագույն կենտրոնն է: Զարգացած են ֆին. և ապահովագր. ծառայությունները: Ունի 3 միջազգ. օդանավակայան: Կան մեքենաշին., մետաղամշակման, նավթավերամշակման, գունավոր մետաղաձուլ. և այլ ձեռն-ներ: Ն. Յ-ում է ՄԱԿ-ի կենտրոնակայանը: Գործում են բազմաթիվ բուհեր, թատրոններ (շուրջ 80, այդ թվում՝ «Մետրոպոլիտեն օպերան», «Վիվիեն Բոմոնտ Թիեթրը», Շեքսպիրյան փառատոնի հարթակները ևն) և թանգարաններ («Մետրոպոլիտեն թանգարանը», Բնական պատմության, Ժամանակակից արվ-ի, Հնդկացու ևն): Պահպանվել են XVII–XVIII դդ-ի տներ, նորգոթ. (Թրինիթի եկեղեցի, 1839–46) ճարտ-յան նմուշներ: Հայտնի են Ն. Յ-ի երկնաքերները Մանհեթենում (1930–31), Ռոքֆելերյան կենտրոնը (1931–40), ինչպես նաև Միջազգ. առևտրի կենտրոնի 2 աշտարակները (1971–73), որոնք կործանվել են 2001-ին (11.09) ահաբեկչական գործողության հետևանքով:

Ն. Յ-ի հայ համայնքն սկզբնավորվել է 1870-ական թթ-ի վերջից (առաջին հայը՝ Խաչատուր Օսկանյան, 1834), ստվարացել XIX դ-ի վերջ–XX դ-ի սկզբին՝ հատկապես Մեծ եղեռնից հետո: 1930-ին Ն. Յ-ի հայերի թիվը 20 հզ. էր: Համայնքը համալրվել է ԵՀՊ-ի և նրան հաջորդող տարիներին՝ Եվրոպայից, Մերձ. և Միջին Արևելքից գաղթած հայերով: Ներկայում (2017) Ն. Յ-ում և շրջակայքում բնակվում է շուրջ 100 հզ. հայ: Ն. Յ. ՀԱԵ ԱՄՆ-ի արլ. թեմի կենտրոնն է: Գործում են 7 առաքել. եկեղեցիներ՝ Սբ Վարդան, Սբ Գրիգոր Լուսավորիչ, Սբ Խաչ, Սբ Սարգիս, Սրբոց Նահատակաց ևն, կաթոլիկ Սբ Աննա և ավետարան. եկեղեցիներ, Սրբոց Նահատակաց, Սբ Գրիգոր Լուսավորիչ ամենօրյա վարժարանները, Սիամանթո ակադ-ը (ճեմարան), Սբ Ներսես հոգևոր ճեմարանը, հայ ազգ. կուս-յունների տեղ. կազմ-յունները: Ն. Յ-ի *Կոլումբիայի համալսարանում* գործում է հայագիտ. ամբիոն:

«ՆՅՈՒ ՅՈՐՔ ԴԵՅԼԻ ՆՅՈՒՍ» («New York Daily News» – «Նյույորքյան ամենօրյա նորություններ»), հաս-քաղ. օրաթերթ (1919-ից, Նյու Յորք՝ անգլ.):

«ՆՅՈՒ ՅՈՐՔ ԹԱՅՄՍ» («New York Times» – «Նյույորքյան ժամանակ»), հաս-քաղ. օրաթերթ (1851-ից, Նյու Յորք՝ անգլ.): Ունի կիրակնօրյա հավելված, լատինաամերիկ. և եվրոպ. թողարկումներ:

«ՆՅՈՒ ՅՈՐՔ ՍԻԹԻ ՕՊԵՐԱ» («New York City Opera»), ԱՄՆ-ի նշանավոր օպեր. ընկ-ներից: Հիմնադրվել է 1943-ին՝ որպես երաժշտության և դրամայի քաղաք. կենտրոնի (այժմ՝ Լինքոլն կենտրոն) մաս:

«ՆՅՈՒ ՅՈՐՔ ՈՒՈՐԼԴ» («New York World» – «Նյույորքյան աշխարհ»), հաս-քաղ. օրաթերթ (1860–1931, Նյու Յորք՝ անգլ.):

«ՆՅՈՒ ՅՈՐՔ ՓՈՍՏ» («New York Post» – «Նյույորքյան փոստ»), հաս-քաղ. երեկոյան օրաթերթ (1801-ից, Նյու Յորք՝ անգլ.):

ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ (New York Philharmonic), ԱՄՆ-ի ինագույն և աշխարհի նշանավոր սիմֆ. նվագախմբերից: Հիմնադրվել է 1842-ին, ղեկ-ներ՝ Վ. Մենգելբերգ, Ա. Տոսկանինի, Դ. Միտրոպուլոս, Լ. Բեռնստայն, Պ. Բուլեզ, Զ. Մեթա, Կ. Մազուր, Լ. Մաազել և ուր.:

ՆՅՈՒ ՋԵՐՍԻ (New Jersey), նահզ ԱՄՆ հս-արլ-ում: Տարածքը՝ 20,3 հզ. *կմ*^{2}, բն.՝ 8,9 մլն (2013): Վարչ. կենտրոնը՝ *Տրենտոն*:

ՆՅՈՒ ՋՈՐՋԻԱ (New Georgia), կղզի Խաղաղ օվկ-ի արմ-ում՝ Սողոմոնի կղզիներ պետության կազմում: Տարածքը՝ 1,8 հզ. *կմ*^{2} (հարակից կղզիների հետ՝ 4 հզ. *կմ*^{2}), բն.՝ 19 հզ. (1999): Գլխ. ք-նվինգստ-ը՝ Ռովիանա:

ՆՅՈՒԱՐԿ (Newark), ք. ԱՄՆ-ի Նյու Ջերսի նահզ-ում, Նյու Յորքի արդ. արվարձանը: Բն.՝ 279 հզ. (2010):

ՆՅՈՒԹ, *մատերիայի* տեսակ, որը կազմված է զրոյից տարբեր հանգստի զանգվածով տարր. մասնիկներից (տարր. մասնիկների մեծամասնությունը, ատոմները, մոլ-ները, իոնները և դրանցից բաղկացած բոլոր, այդ թվում՝ նաև կենդանի համակարգերը): Քիմիայում ընդունված է Ն. դասակարգել պարզի (նույն քիմ. տարրի ատոմներից կազմված) և բարդի (քիմ. միացություններ):

ՆՅՈՒԹԱՓՈՒՆԱԿԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱ, կերի կամ օրաբաժնի համախառն էներգիայի մաս, որը կենդանու օրգանիզմում մնում է կղանքի, մեզի և մարսող. գազերի արտաթորումից հետո: Չափվում է էներգ. կերային միավորներով (10 *ՄՋ* կամ 2500 *կալ*): Ն. է-ի ցուցանիշներն օգտագործվում են կերի և օրաբաժնի ընդհ. սննդարարությունը գնահատելու և գղտ. կենդանիների յուրաքանչյուր տեսակի պահանջմունքները չափակարգելու համար:

ՆՅՈՒԹԱՓՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, մետաբոլիզմ (հուն.՝ metabole – փոխարկում, փոփոխություն), օրգանիզմում ընթացող բոլոր քիմ. փոփոխությունների և նյութերի ու էներգիայի փոխարկումների բոլոր տեսակների ամբողջությունը, որն ապահովում է օրգանիզմների կենսագործունեությունն ու ինքնավերարտադրությունը, կապը շրջակա միջավայրի հետ և հարմարումն արտաքին միջավայրի փոփոխություններին:

ՆՅՈՒԹԵՐԻ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գիտություն կառուցվածքների տարրերի և մեքենամասերի ամրության և կոշտության մասին: Ուսումնասիրման հիմն. օբյեկտներն են ձողերը և սալերը, որոնք ուսումնասիրվում են տես. և փորձն. մեթոդներով: Ն. դ-յան գլխ. խնդիրներն են՝ դեֆորմացվող մարմինների հատկությունների ուսումնասիրությունը և առավել տիպային (տարածված) տարրերի (մեքենամասերի) ամրության, կոշտության, կայունության և տատանումների հաշվարկի մեթոդների ստեղծումը՝ ստատիկ և դինամիկ. ծանրաբեռնվածության դեպքերում:

ՆՅՈՒԽՈՏԻԿՈՎ, Միխայիլ Ալեքսանդրովիչ (1906–1998), ԽՍՀՄ վաստ. փորձարկող օդաչու (1959), գնդ.: ԽՄ հերոս (1957): Փորձարկել է մի շարք մխոց. և հրթիռ. ռմբակոծիչներ, Յակ կործանիչներ ևն: Թռել է 232 տիպի ինքնաթիռներով:

ՆՅՈՒԿՎԻՍՏ (Nykvist) Սվեն (1922–2006), շվեդ կինոօպերատոր: 1953–ից աշխատել է ռեժ. Ի. *Բերգմանի* («Ծաղրածուների երեկոն», 1953, Հ. Բլադի հետ, «Աղբյուր», 1960, «Ինչպես հայելու մեջ», 1961, «Կախարդական ֆլեյտա», 1975, «Աշնանային սոնատ», 1978, «Ֆաննի և Ալեքսանդր», 1982, ևն), նաև այլ ռեժ-ների («Փոստատարը զանգը տալիս է կրկնակի», 1981, «Զոհաբերություն», 1986, «Լինել նշանավոր», 1998, ևն) հետ:

ՆՅՈՒՄԵՆ (Newman) Պոլ (1925–2008), ամերիկացի դերասան, կինոռեժ., պրոդյուսեր: Նկարահանվել է «Կատուն շիկացած տանիքին», «Պատանեկության քաղցրաձայն թռչունը», «Խարդախություն», «Վճիռ», «Փողի գույնը», «Կայսրության անկումը» և այլ ֆիլմերում: «Ռեյչել, Ռեյչել» (1968), «Երբեմն դա վեհ հասկացություն է» (1971), «Հարրին և որդին» (1983, գլխ. դերում՝ Ն.) կինոնկարների ռեժ-ն է:

ՆՅՈՒՄԵՆ Ջոն Հենրի (1801–1890), անգլիացի աստվածաբան, հրապարակախոս, մանկավարժ, եկեղեց. գործիչ: 1845-ից անգլիկանությունից անցել է կաթոլիկության: 1879-ից՝ կարդինալ: Պաշտպանել է «դոգմաների զարգացման» տեսությունը և սխոլաստիկ շրջանակներից ազատ «բաց աստվածաբանության» սկզբունքը:

ՆՅՈՒՍԼԱՅՆ-ՖՈԼՀԱՐԴ (Nüsslein-Volhard) Քրիստիանա (ծ. 1942), գերմանացի գենետիկ: Ուսումնասիրել է դրոզոֆիլների վաղսաղմն. զարգացման կարգավորման մեխանիզմները, բացահայտել նրա գենետիկ. վերահսկումը: Նորելյան մրց. (1995, Է. *Վիշաուսի* և Է. *Լյուիսի* հետ):

ՆՅՈՒՏՈՆ (Newton) Իսահակ (1643–1727), անգլիացի մաթեմատիկոս, մեխանիկոս, աստղագետ և ֆիզիկոս, դասական *մեխանիկայի* ստեղծողը: Լոնդոնի թագավոր. ընկ-յան անդամ (1672) և նախագահը (1703–ից): Հիմնարար աշխ-ներն են «Բնափիլիսոփայության մաթեմատիկա-

կան հիմունքները» (1687) և «Օպտիկան» (1704): Մշակել է (անկախ՝ Գ. *Լայբնիցից*) դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվը: Հայտնաբերել է լույսի դիսպերսիան, մեներանգ աբեռացիան, հետազոտել ինտերֆերենցիան և դիֆրակցիան, զարգացրել է լույսի կորպուսկուլ. տեսությունը, առաջադրել կորպուսկուլ. և ալիք. պատկերացումները համադրող վարկած: Կառուցել է հայելային աստղադիտակ, ձևակերպել է դաս. մեխանիկայի հիմն. օրենքները (*Նյուտոնի օրենքներ*), հայտնաբերել է տիեզ. ձգողության օրենքը (Ն–ի ձգողության օրենք), տվել երկն. մարմինների շարժման տեսությունը, ստեղծել երկն. մեխանիկայի հիմքերը: Տարածությունը և ժամանակը համարել է բացարձակ: Ն–ի աշխ–ները մեծապես առաջ են անցել ժամանակի գիտ. մակարդակից: Ն. եղել է դրամահատարանի տնօրեն և կարգի է բերել Անգլիայի քայքայված դրամ. համակարգը: Զբաղվել է նաև ալքիմիայով, հին թագավորությունների ժամանակագրությամբ, աստվածաբանությամբ:

ՆՅՈՒՏՈՆ, ուժի միավոր ՄՄՀ–ում՝ Ն: 1 Ն հավասար է այն ուժին, որը 1 *կգ* զանգվածով մարմնին ազդման ուղղությամբ հաղորդում է 1 *մ/վ²* արագացում: Կոչվել է Ի. *Նյուտոնի* անվամբ. 1 Ն = 105 *դին* = = 0,012 *կգ · վ*:

ՆՅՈՒՏՈՆԻ ԵՐԿԱՆԴԱՄ, 2 գումարելիների (երկանդամի, բինոմի) գումարի ամբողջ դրական աստիճանն այդ գումարելիների աստիճանների միջոցով արտահայտող բանաձև՝

$$(x+y)^n = \sum_{n=0}^{k} C_n^k x^k y^{n-k},$$

C_n^k թվերը [երկանդամի գործակիցները, դրանք երբեմն նշանակում են $\binom{n}{k}$, արտահայտվում են n, k և n–k թվերի ֆակտորիալներով՝

$$C_n^k = \frac{n!}{k!\,(n-k)!}:$$

Ըստ սահմանման՝ 0! = 1: Ի. *Նյուտոնը* նշել է երկանդամի բանաձևի կիրառման հնարավորությունը նաև կոտորակ. կամ բացաս. աստիճանացույցների համար: n = 2 և n = 3–ի դեպքերում Ն. ե–ի մասնավոր դեպքեր են x և y 2 գումարելիների քառակուսու և խորանարդի գումարի բանաձևերը:

ՆՅՈՒՏՈՆԻ ՁԳՈՂՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ, տես *Տիեզերական ձգողության օրենք*:

ՆՅՈՒՏՈՆԻ ՕՂԱԿՆԵՐ, իրար հերթագայող լուսավոր և մութ համակենտրոն օղակներ, որոնք դիտվում են 2 ոսպնյակների գնդային մակերևույթների կամ ուռուցիկ գնդային ոսպնյակի և հարթ թիթեղի հպման կետի շուրջը մեներանգ լույսով լուսավորելիս: Ն. օ. առաջանում են հպվող մարմինները բաժանող բարակ օդ. բացակում՝ լույսի *ինտերֆերենցիայի* հետևանքով: Այս երևույթն առաջինը դիտել և նկարագրել է Ի. *Նյուտոնը* (1675): Ոչ մեներանգ լուս. փնջի դեպքում մութ և լուսավոր օղակների փոխարեն դիտվում են գունավոր օղակներ:

ՆՅՈՒՏՈՆԻ ՕՐԵՆՔՆԵՐ մեխանիկայի, դաս. *մեխանիկայի* 3 հիմն. օրենքները: Ձևակերպել է Ի. *Նյուտոնը* 1687–ին: **Առաջին օրենք**. յուրաքանչյուր մարմին շարունակում է պահպանել դադարի կամ հավասարաչափ ուղղագիծ շարժման վիճակը, քանի դեռ նրա վրա ազդող ուժերը չեն փոխել այդ վիճակը: **Երկրորդ օրենք**. մարմնի զանգվածի և նրա արագացման արտադրյալը հավասար է ազդող ուժին, իսկ արագացման ուղղությունը համընկնում է ուժի ուղղությանը: **Երրորդ օրենք**. ազդումը միշտ ունի հավասար և հակադիր հակազդում, այլ կերպ՝ 2 մարմինների փոխազդեցություններն իրար վրա, ըստ մեծության, միշտ հավասար են և հակառակ ուղղված:

ՆՅՈՒՏՈՆ–ԼԱՅԲՆԻՑԻ ԲԱՆԱՁԵՎ, *ինտեգրալային հաշվի* հիմն. բանաձևը: Արտահայտում է f (x) ֆունկցիայի որոշյալ ինտեգրալի և նրա նախնական F (x) ֆունկցիայի միջև եղած կապը՝

$$\int_a^b f(x)\,d(x) = F(b) - F(a):$$

ՆՅՈՒՐՆԲԵՐԳ (Nürnberg), ք. Գերմանիայի Բավարիա երկրամասում՝ Պեգնից գետի և Հռենոս–Մայն–Դանուբ ջրանցքի ափին: Բն.՝ 504,5 հզ. (2010): Տրանսպորտ. հանգույց է, ունի օդանավակայան, մետրոպոլիտեն: Հայտնի է XI դ–ի կեսերից: 1945–46–ին Ն–ում տեղի է ունեցել նացիստ. ռազմ. հանցագործների *Նյուրնբերգյան դատավարությունը*:

ՆՅՈՒՐՆԲԵՐԳՅԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, նացիստ. գլխ. ռազմ. հանցագործների դատավարությունը: Իրականացրել է Միջազգ. զինվ. դատարանը (20.11.1945–01.10.1946) Գերմանիայի *Նյուրնբերգ* ք–ում: Պատասխանատվության են ենթարկվել նացիստ. Գերմանիայի բարձրագույն ռազմ. և պետ. գործիչները (Հ. *Գյորինգ*, Վ. *Կեյտել*, Է. Կալտենբրուններ, Ա. Յոդլ, Ա. Շպեեր, Յ. Շախտ և ուր.), 12 մարդ դատապարտվել է մահվան, 7–ը՝ երկարաժամկետ կամ ցմահ բանտարկության: Հանցավոր են ճանաչվել Գերմանիայի նացիոնալ–սոց. բանվ. կուս–յան ղեկ. կազմը, անվտանգության ծառայությունը, *գեստապոն*: Ն. դ. մերկացրել է նացիոնալ–սոցիալիզմի էությունը, պետությունների ու ողջ ժողդ–ների ոչնչացման նրա ծրագրերը և վտանգավորությունը մարդկության համար:

ՆՅՈՒՔԱՍԼ (Newcastle), ք–ն Ավստրալիայի Նոր Հվ. Ուելս նահանգում: Բն.՝ 295,6 (2010): Մոտակայքում արդյունահանվում է քարածուխ:

ՆՅՈՒՔԱՍԼ ԹԱՅՆԻ (Newcastle upon Tyne), ք. Մեծ Բրիտանիայում (Անգլիա), Թայն էնդ Ուիր կոմսության վարչ. կենտրոնը: Բն.՝ 168 հզ. (2010): Խոշոր արդ. և առևտրաֆին. կենտրոն է:

ՆՅՈՒՔԱՍԼՅԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, **կեղծ ժանտախտ**, հավազգիների խիստ հպավարակ. վիրուս. հիվանդություն. բնորոշ են թռչունների շնչառ. օրգանների, ստամոքսաղիք. և ԿՆՀ–ի ախտահարումները: Հիվանդ ու թույլ թռչուններին ոչնչացնում են անարյուն եղանակով և այրում, իսկ կլինիկապես առողջներին սպանդի են ենթարկում և մսեղիքն օգտագործում ջերմ. մշակումից հետո:

ՆՅՈՒՔՈՄԵՆ (Newcomen) Թոմաս (1663–1729), անգլիացի գյուտարար: Ձերմ. շարժիչի ստեղծողներից: Կառուցել է (1705) հանքահորերից ջուրը դուրս մղող շոգեմեքն. մեքենա, որը XVIII դ–ում լայնորեն տարածված էր:

ՆՅՈՒՖԱՈՒՆԴԼԵՆԴ (Newfoundland), կղզի Ատլանտ. օվկ–ում, Հս. Ամերիկայի արլ. ափի մոտ: *Լաբրադոր* թ–կղզուց բաժանվում է Բել Այլի նեղուցով: Կանադայի համանուն նահանգ–ի մի մասն է: Տարածքը՝ 111 հզ. *կմ²*: Մակերևույթն ալիքավոր է՝ մինչև 814 *մ* բարձր–յան մնացորդ. բլրաշարերով: Մինչև 400 *մ* բարձր–ները ծածկված են ասեղնատերև անտառներով, ավելի բարձր՝ տունդրային բուսականությամբ: Բնակիչներն զբաղվում են ձկնորսությամբ: Գլխ. ք.՝ *Սենթ Ջոնս:*

ՆՅՈՒՖԱՈՒՆԴԼԵՆԴ, ծառայող. շների ցեղ: Բուծվել է *Նյուֆաունդլենդ* կղզում: Խոշոր, ամուր մարմնակազմով, խաղաղասեր շներ են: Օգտագործվել են խեղդվողներին փրկելու համար: Բուծում են ԱՄՆ–ում, Արմ. Եվրոպայի երկրներում:

ՆՅՈՒՖԱՈՒՆԴԼԵՆԴ ԵՎ ԼԱԲՐԱԴՈՐ (Newfoundland and Labrador), նահանգ Կանադայի արլ–ում՝ Ատլանտ. օվկ–ի ափին: Ընդգրկում է *Նյուֆաունդլենդ* կղզին և *Լաբրադոր* թ–կղզու հս–արլ. մասը: Տարածքը՝ 404,6 հզ. *կմ²*, բն.՝ 526,7 հզ (2013): Վարչ. կենտրոնը և գլխ. նվահզստ–ը՝ Սենթ *Ջոնս*:


ՆՇԱՆ ՄԻՐՋԱ. (Միրզայան) Գրիգորի Մարգարի (1849–XX դ–ի 1–ին քառորդ), գրող, հրապարակագիր: Հովհաննես *Վանանդեցու* թոռը, Սարգիս *Վանանդեցու* եղբայրը: Հեղինակ է «Տորա» (1871), «Երուանդ եւ Ամիլիա» (1883–84) և այլ վեպերի:

ՆՇԱՆԱԿԻՐ ԱՏՈՄՆԵՐ, նույնն են, ինչ *իզոտոպային ցուցիչները*:

ՆՇԱՆԱԿԻՐ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, քիմ. միացություններ, որոնցում մեկ կամ մի քանի տարրերի ատոմներն ունեն բնականից տարբեր իզոտոպ. կազմ: Որպես «նշան» կարող են պարունակել ինչպես կայուն, այնպես էլ ճառագայթաակտիվ իզոտոպներ (նշանակիր ատոմներ): Օգտագործում են քիմ. վերլուծության, կենսբան, բժշկության մեջ և տեխնիկայում:

ՆՇԱՆՅԱՆ (Փափազյան) Աննա Իսահակի (ծ. 1930), երգչուհի (սոպրանո): ՀԽՍՀ վաստ. արտիստ (1970): Ժան–Պիեռ *Նշանյանի* մայրը: 1963–80–ին՝ ԵՕԲԹ–ի մեներգչուհի (Վիոլետա, Դեզդեմոնա՝ Ջ. Վերդիի «Տրավիատա», «Օթելլո», Օլիմպիա՝ Տ. Չուխաճյանի «Արշակ Բ», Անուշ, Շուշան՝ Ա. Տիգրանյանի «Անուշ», «Դավիթ Բեկ», ևն): Նկարահանվել է կինոյում («Մայո Ժակը և ուրիշներ», 1964, «Քաղաքավարության կանոնները», 1964, «Երգում է Աննա Նշանյանը», 1976): 1980–ից՝ ԱՄՆ–ում: Հիմնադրել է «Անահիտ» երգի անսամբլը: ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2013):

ՆՇԱՆՅԱՆ Ժան–Պիեռ Արմենակի (ծ. 1953), դերասան, ռեժ.: ՀՀ վաստ. արտիստ (2014): Աննա *Նշանյանի* որդին, Շաքե *Թոփսանյանի* ամուսինը: 1976–80–ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասան (Ֆեդերիկո՝ Դե Ֆիլիպպոյի «Շաբաթ, կիրակի, երկուշաբթի», Գագիկ՝ Վ. Պետրոսյանի «Ծանր է Հիպոկրատի գլխարկը», Արտակ՝ Ժ. Հարությունյանի «Հարսնացու հյուսիսից», ևն): Նկարահանվել է «Սթափ եղիր», «Աչքեր», «Ձենքի արքան», «Օպերացիա–N» (բոլորը՝ Հոլիվուդում»), «Մի՝նայիր հայելուն», «Վանա ծովու արշալույսը», «Փուշը» (հայկ.) և այլ ֆիլմերում: 1983–ին Լոս Անջելեսում հիմնադրել է (կնոջ հետ) Վարդան Ամեմյանի անվ. թատրոնը: Բեմադրել է Լ. Շանթի «Ինկած բերդի իշխանուհին», «Կայսր», Բ. Սլեյդի «Ռոմանտիկ կոմեդիա» ևն (գլխ. դերերում՝ Ն.): Որդին՝ **Արման Ն.** (ծ. 1978), դերասան, ռեժ., երգիչ: Խաղացել է Լոս Անջելեսի և Նյու Յորքի թատրոններում (Բիֆ՝ Ա. Միլլերի «Վաճառողի մահը», Ստենլի՝ Թ. Ուիլյամսի



«Ցանկություն» տրամվայ», Հոլիվուդի թատեր. միության «Լավագույն երիտասարդ դերասան» մրց., 2001), նկարահանվել է «Վրիժառուի օրագիրը» (նաև պրոդյուսեր), «Հայաստան, իմ սեր...» (երկուսն էլ՝ Հոլիվուդում), «Հին արքաներ» (բազմասերիալ) և այլ ֆիլմերում: Բեմադրել է Ն. Սայմոնի «Կենտ-զույգ» կատակերգությունը (2013, Երևան, 2014, Լոս Անջելես): Նկարահանել է տեսահոլովակներ:

ՆՇԱՆՅԱՆ Կարապետ, **Շառլ** (1861–1950), նկարիչ: 1906–ից՝ Փարիզում: Հեղինակ է «Աշեղինների հարսանիքը», «Պոլսեցի հայը», «Եգիպտացի պարուհին», «Դերվիշը», «Պանդուխտի նամակը» (1897, ՀԱՊ) և այլ գործերի:

ՆՇԱՆՅԱՆ Տրդատ Նշանի (1892–1962), դերասան, ռեժ., թատեր. գործիչ: 1919–22–ին՝ Կ. Պոլսի հայ դրամատիկ. խմբի դերասան, 1923–40–ին՝ Փարիզի հայ դրամատիկ և Լիոնի «Նշանյան» թատերախմբերի ղեկ.: Դերերից են՝ Պաղտասար աղբար (Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար»), Էլիզբարով (Շիրվանզադեի «Պատվի համար»), Կորրադո (Պ. Ջակոմետտիի «Ոճրագործի ընտանիքը»), Օթելլո, Համլետ (Վ. Շեքսպիրի «Օթելլո», «Համլետ») ևն: Հրատարակել է «Հայ կեանք» (1931, Փարիզ) երկշաբաթաթերթը: Ջբաղվել է նաև քանդ–յամբ:

ՆՇԱՆՆԵՐ ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ, Արեգակի, Լուսնի, մոլորակների, կենդանաշրջանի համաստեղությունների, լուսատուներ ի տեսքի ու դասավորության, ամիսների ու շաբաթվա օրերի պայման. նշաններ ու սխեմատիկ պատկերներ: Հայտնի են վաղ անցյալից: Ն. ա–ի մեծ մասը ցայսօր օգտագործում են աստղագիտ. գրկ–յան, աստղագուշակության և օրացույցների մեջ (տես նկ.):

ՆՇԵՆԻ (Amygdalus), վարդազգիների (վարդածաղիկներ) ընտանիքի ծառերի և թփերի ցեղ: Հայտնի է 40 տեսակ, ՀՀ–ում՝ 3 (Նահիրյան Ն., Ֆենցլի Ն., սովոր. Ն.): Հանդիպում է Կոտայքի, Տավուշի, Արագածոտնի, Սյունիքի, Գեղարքունիքի մարզերի ստորին և միջինլեռն. գոտիներում (500–2200 *մ* բարձր–ներում): Աճում է չոր, քարքարոտ վայրերում, ժայռոտ լանջերին ևն: Սովոր. Ն. տարածված է նաև մշակության մեջ՝ Լոռու, Տավուշի, Սյունիքի մարզերում: Նահիրյան Ն. Այսրկովկասի հվ–ի բնաշխարհիկ է: ՀՀ–ում հանդիպում է Սյունիքի մարզում (ստորին և միջինլեռն. գոտիներում): Աճում է չոր, քարքարոտ լանջերին, խճոտ վայրերում: Ծաղիկները խոշոր են, կարմրավուն: Ծաղկում է մինչև տերևների երևալը. գարնան ավետաբեր է. գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՆՇԻԿԱՔՈՒՐԵ, **տոնզիլիտ** (լատ.՝ tonsille – նշանման գեղձեր), նշիկների (հաճախ՝ քմային) բորբոքում: Սուր Ն. ***անգինայի*** հիմն. ախտանշանն է: Քրոնիկ. Ն. սովորաբար զարգանում է կրկնվող անգինաների դեպքում և կարող է հանգեցնել հոդերի, սրտի, երիկամների հիվանդությունների առաջացման:

ՆՇԻԿԱՄՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ, **տոնզիլոկարդիալ սինդրոմ**, սիրտանոթ. համակարգի փոփոխությունները քրոնիկ. ***նշիկաբորբի*** ժամանակ՝ պայմանավորված բակտերիային թույների ազդեցությամբ, ախտաբան. ռեֆլեքսներով և ալերգիայով: Դրսևորվում է սրտի ծակող ցավերով, սրտխփոցով, հևոցով, սրտում սիստոլային աղմուկով, մարմնի ջերմաստիճանի բարձրացմամբ: Վերանում է նշիկաբորբի բուժումից հետո:

ՆՇԻԿՆԵՐ, **նշագեղձեր**, մարդու և ցամաք. կենդանիների վերին շնչառ. ուղիների պատերի լորձաթաղանթում ներդրված ավշային հյուսվածքի խոշոր կուտակումներ: Ն. ունեն ավշագոյացման և պաշտպ. ֆունկցիաներ:

ՆՇԻԽԱՐ, Սուրբ ***Հաղորդության*** բաղադրիչներից (հաց ու գինի). բաժանվում է Սուրբ ***Պատարագի*** ժամանակ: Ն. փոքր, բոլորաձև, անթթխմոր հաց է՝ բաղարջ, վրան՝ խաչելության կամ տնօրինական մեկ այլ խորհրդանշան, իսկ 2 կողմերին մակագրություն՝ Հիսուս Քրիստոս: Տաղավար տոներին պատրաստում են ավելի մեծ Ն–ներ՝ հաղորդվողների բազմությանը բավարարելու համար:

ՆՇՏԱՐԻԿՆԵՐ, ***անողնաշարների*** դասի թիկնալարավոր (քորդավոր) կենդանիների սեռ: Մարմինը (երկ.՝ մինչև 8 *սմ*) թափանցիկ է, նշտարաձև: Հայտնի է 7 տեսակ՝ բարեխառն և տաք ծովերի (այդ թվում՝ Բալթիկ) ավազի մեջ՝ մինչև 30 *մ* խոր–ներում:

ՆՈԲԵԼԻՈՒՄ (Nobelium), No, տարրերի պարբեր. համակարգի III խմբի արհեստականորեն ստացված ճառագայթաակտիվ քիմ. տարր: Կարգաթիվը՝ 102, ակտինիդ է: Անվանումը տվել են շվեդ գիտնականները՝ ի պատիվ Ա. Բ. Նոբելի (տես ***Նորելներ***): ^{259}No ($T_{1/2}$=58 *ր*) առավել կայուն իզոտոպն է:

ՆՈԲԵԼՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ (շվեդ.՝ Nobelpriset), ամենամյա միջազգ. մրց., սահմանվել է շվեդ գյուտարար Ա. Բ. Նոբելի (տես ***Նորելներ***) կտակի համաձայն: Տրվում է (1901–ից) ֆիզիկայի, քիմիայի, ֆիզիոլոգիայի և բժշկության, գրկ–յան, 1969–ից՝ տնտեսագիտ–յան ընագավառների աշխ–ների, ինչպես նաև խաղաղության ամրապնդման գործունեության համար: Հանձնման արարողությունները տեղի են ունենում Ստոկհոլմում և Օսլոյում՝ Ա. Նոբելի մահվան օրը՝ դեկտ. 10–ին: Շնորհվում է (բացի Խաղաղության Ն. մ–ից) անհատապես և միայն 1 անգամ: Բացառության կարգով կրկնակի Ն. մ. շնորհվել է Մ. ***Սկլադովսկայա–Կյուրիին*** (1903, 1911), Լ. ***Պոլինգին*** (1954, 1962), Ջ. ***Բարդինին*** (1956, 1972) և Ֆ. ***Սենգերին*** (1958, 1980): Հետմահու Ն. մ. չի շնորհվում:

ՆՈԲԵԼՆԵՐ (Nobel), շվեդ գյուտարարներ և արդյունաբերողներ՝ հայրը, որդիները և թոռը: **Էմանուիլ Ն.** (1801–1872), ստորջրյա ականների գյուտարար: 1842–ին Ս. Պետերբուրգում հիմնադրել է մեխ. գործարան: **Ալֆրեդ Բեռնարդ Ն.** (1833–1896), ***Նորկյան մրցանակ*** սահմանողը, Էմանուիլ Ն–ի որդին: 1867–ին հայտնագործել է ուժանակը, 1888–ին՝ բալիստիտը: Պայթուցիկ նյութերի արտադր–յան բազմաթիվ ձեռն–ների կազմակերպիչ և սեփականատեր: Լոնդոնի թագավոր. ընկ–յան և Շվեդիայի ԳԱ անդամ: **Լյուդվիգ Ն.** (1831–1888), ձեռնարկատեր, հաստոցների կոնստրուկտոր: Ռուս. տեխ. ընկ–յան անդամ: **Էմանուիլ** Ն–ի որդին, Ալֆրեդ Ն–ի եղբայրը: 1862–ին Ս. Պետերբուրգում հիմնել է մեխ. գործարան (1879–ից՝ «Լյուդվիգ Ն.» գործարան, 1919–ից՝ «Ռոսդիզել»): Եղբայրների հետ Բաքվում հիմնադրել է նավթարդ. ձեռն. (1879–ից՝ «Նորել եղբայրների ընկերություն», Ռուսաստանի նավթարդ–յան առաջատարներից): **Էմանուիլ Ն.** (1859–1932), Լյուդվիգ Ն–ի որդին: 1888–1917–ին գլխավորել է «Նորել եղբայրների ընկերությունը» Ռուսաստանում: 1918–ից՝ Շվեդիայում:

ՆՈԲԻԼԵ (Nobile) Ումբերտո (1885–1978), իտալացի դիրիժաբլաշինարար, գեն.: Ռ. ***Ամունդսենի*** արշավախմբի (1926) «Նորվեգիա» դիրիժաբլի հրամ.: Ղեկավարել է «Իտալիա» դիրիժաբլով Հս. բևեռ ուղևորված իտալ. արշավախումբը (1928):

ՆՈԳՈՒՉԻ (Noguchi) Իսամու (1904–1988), ամերիկացի քանդ. (ծագումով՝ ճապոնացի): Սյուրռեալիզմի և հինճապոն. թրծակավի պլաստիկայի ազդեցությամբ մետաղներից և քարերից ստեղծել է արստրակտ գործեր, կենսաձևային քանդակներ: Հեղինակ է լանդշաֆտ. դիզայնի (ՅՈՒՆԵՍԿՕ–ի գլխ. գրասենյակի այգին, Փարիզ, 1956–58):

ՆՈՋԴՐԱՉՅՈՎ Ալեքսանդր Դանիլովիչ (ծ. 1931), ռուս. նյարդաֆիզիոլոգ: ՌԳԱ ակադ. (1997, թղթ. անդամ՝ 1991–ից): ՌԴ գիտ. վաստ. գործիչ (1999): Ուսումնասիրել է վեգետատիվ նյարդ. համակարգի ֆունկցիոնալ կառուցվածքը, այդ թվում՝ սիրտանոթ., շնչառ. և օրգանիզմի այլ համակարգերի կենսագործունեությունն ապահովող նյարդ. և հորմոն. մեխանիզմները:

ՌԴ Պետ. (1994), Կառ–յան (1999, 2005) մրց–ներ, ՌԳԱ Ի. Պ. Պավլովի անվ. մեդալ (2005):

ՆՈՋՈՒՇԽՈՒՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ (հուն.՝ nosos – հիվանդություն), բժշկ. և անասնաբուժ. աշխարհագրության բաժին. ուսումնասիրում է տարբեր աշխարհագր. գոտիներում առանձին հիվանդությունների տարածվածության օրինաչափությունները:

ՆՈՋՈԼՈԳԻԱ (< հուն. nosos – հիվանդություն և ...*լոգիա*), ուսմունք հիվանդությունների (այսպես կոչված՝ նոզոլոգ. ձևերի), նրանց դասակարգման ու անվանակարգման մասին:

ՆՈՋՈՖՈՐԻԱ (< հուն. nosos – հիվանդություն և ...*ֆորիա*), որևէ հիվանդությունով հիվանդանալու սևեռուն վախ:

«ՆՈԹՐԸ ՎՈՒԱ» («Notre Voix» – «Մեր ձայնը»), ազգ., մշակութ. հանդես (1951–80, Փարիզ՝ ֆրանս.): Ֆրանսիայի հայ երիտասարդաց միության պաշտոնաթերթը: Խմբ–ներ՝ Գ. Հեքիմյան, Հ. Համբարյան, Ռուբեն Մելիք:

ՆՈԼԱՆ (Nolan) Սիդնի Ռոբերտ (1917–1992), ավստրալիացի նկարիչ: Կրել է Պ. Պիկասոյի, Պ. Կլեեի, ապա՝ սյուռռեալիզմի, դադաիզմի («Տղան և լուսինը», 1940) ազդեցությունը: Հեղինակ է լեգենդար ավազակ Ն. Կելլիին նվիրված նկարաշարի, նաև բնանկարների, որմնանկարների (Մելբուռնի արվ–ի կենտրոնում, 1968–70): Ձևավորել է ներկայացումներ (Ի. Ֆ. Ստրավինսկու «Սրբազան գարուն» բալետը, 1961, ևն), նկարազարդել Ա. Դանտեի, Վ. Շեքսպիրի և ուր. երկերից:

ՆՈՆԿԱՈՒՏ (անգլ.՝ knock-out – գետնող հարված), այնպիսի վիճակ բռնցքամարտում, երբ հարվածից գետնված հակառակորդը 10 *վ*–ի ընթացքում չի կարողանում ոտքի կանգնել մարտը շարունակելու համար և համարվում է պարտված:

ՆՈՒԿԱՈՒՆ (անգլ.՝ knock-down – խորտակիչ հարված), այնպիսի վիճակ բռնցքամարտում, երբ ուժեղ հարվածից հետո հակառակորդը մինչև 10 *վ* լրանալը վերականգնվում է և կարողանում է շարունակել մարտը:

ՆՈՆՏՅՈՒՐՆ (ֆրանս.՝ nocturne, < nocturnus – գիշերային), **գիշերերգ, գիշերանվագ**: Բազմամաս երաժշտ. ստեղծագործություն (մեծ մասամբ՝ փողավոր գործիքների համար)՝ XVIII–XIX դդ–ի սկզբին, որը կատարվում էր բացօթյա՝ երեկոյան կամ գիշերը: Ազգակից է ***դիվերտիմենտին, կասացիային*** և ***սերենադին*** (Վ. Ա. Մոցարտ, Յ. Հայդն), XIX դ–ից դաշնամուր. ոչ մեծ քնար. պիես է (Ջ. Ֆիլդ, Ֆ. Շոպեն, Պ. Ի. Չայկովսկի և ուր.): Ն. են գրել նաև Մ. Եկմալյանը, Ա. Խաչատրյանը, Ա. Բաբաջանյանը և ուր.:

ՆՈՀԲԱՏՅԱՆ (Նոխրատյան–Թորոսյան) Գեորգի Կոբյունի (1926–1993), ավիակոնստրուկտոր: Աշխ–ները վերաբերում են ինքնաթիռի հանգույցների և ագրեգատների, շասսիի, կառավարման, ուժ. սարքավորումների, վառելիք. համակարգերի, վերգետնյա սարքավորումների նոր համակարգերի մշակման հարցերին: Մասնակցել է ԻԼ–62, –86 ինքնաթիռների նախագծման, կառուցման ու շահագործման աշխ–ներին:

ԽՍՀՄ Պետ. (1971), Լենինյան (1981) մրց–ներ, Աշխ. կարմիր դրոշի, «Պատվո նշան» (2) շքանշաններ:

ՆՈՂԱՅԵՐԵՆ, ***նողայների*** լեզուն: Պատկանում է թյուրք. լեզվաընտանիքի հսարմ. (ղփչաղյան) խմբին: Գրի հիմքում արաբ. (մինչև 1928–ը), լատ. (1928–37), ապա ռուս. (1938–ից) այբուբենն է:

ՆՈՂԱՅՆԵՐ (ինքնանվանումը՝ նողայ), ժողդ ՌԴ–ում: Ընդհ. թիվը՝ 90,7 հզ. (2002): Ապրում են Դաղստանում (38,2 հզ.), Մտավրոպոլի երկրամասում (20,7 հզ.), Կարաչայ–Չերքեսիայում (14,9 հզ.) և Չեչնիայում (3,6 հզ.): Լեզուն՝ նողայերեն: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են:

ՆՈՇԻ (Cupressus), **կիպարիս, սարո**, նոճազգիների ընտանիքի ասեղնատերև, մշտադալար ծառերի, հազվադեպ՝ թփերի ցեղ: Հայտնի է 15–20 տեսակ՝ բարեխառն, տաք գոտիներում: ՀՀ–ում աճեցնում են մշտադալար և արիզոնյան Ն–ները: Մշտադալար (բրգաձև) Ն. (բարձր.՝ մինչև 30 *մ*) և այլ տեսակներ մշակում են որպես գեղազարդիչ: Բնափայտն օգտագործում են կահույք և մանր իրեր պատրաստելու համար:

ՆՈՄԱ, ջրային քաղցկեղ, դեմքի փափուկ հյուսվածքների հազվադեպ հանդիպող հիվանդություն: Բնորոշ է առավելապես հյուծված երեխաներին՝ ծանր վարակիչ հիվանդություններից հետո: Հայտնի է որպես թաց ***փտախտ***:

ՆՈՄԻՆԱԼԻԶՄ, միջնադար. սխոլաստիկ. փիլ–յան ուղղություն (XI–XII դդ.), որը, ի հակադրություն ***ռեալիզմի***, մերժել է ընդհանուր գաղափարների (ունիվերսալիա) ռեալ գոյությունը՝ դրանք համարելով սոսկ անուններ (լատ. nomen – անուն, nominalis – անվան, այստեղից էլ՝ անվանումը), բառ. նշանակություններ, որոնք հանգեցվում են նույնատիպ եզակի իրերի բազմությանը (ծայրահեղ Ն., Ի. Ռոսցելինն և ուր.) կամ մտային կառույցներ, որոնք առկա են մարդու բանականության մեջ (հասկացություններ, չափավոր Ն.՝ կոնցեպտուալիզմ, Պ. Աբելյար): Ն. հատկապես զարգացել է XIV–XV դդ–ում (Ու. Օկկամ և նրա դպրոցը):

Հայ փիլ–յան պատմության մեջ Ն–ի և ռեալիզմի սաղմերը դրսևորվել են նրա ձևավորման շրջանում (V–VI դդ.): Հայ փիլ–յանն առավել բնորոշ է հակումը դեպի Ն.: Դավիթ Անհաղթն արծարծել է ընդհանուրի և եզակիի առնչության խնդիրը, որը նույնությամբ կրկնել են Ավիցեննան և Թովմա Աքվինացին: Հայ իրականության մեջ Ն–ի առաջին խոշոր ներկայացուցիչը Վահրամ Րաբունին է, հետագայում այն զարգացել է Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու, Սիմեոն Ջուղայեցու աշխ–ներում:

ՆՈՄՈԳԵՆԵԶ (< հուն. nomos – օրենք և ...*գենեզ*), կենսբ. էվոլյուցիայի ըմբռնումը՝ որպես որոշակի ներքին օրինաչափությունների կենսընթաց, որը չի սահմանափակվում արտաքին միջավայրի ազդեցություններով: Ն–ի տեսությունը և եզրույթն առաջարկել է Լ. Ս. *Բերգը* 1922–ին: Ի տարբերություն Չ. *Դարվինի* (տես *Դարվինիզմ*)՝ Բերգը ենթադրել է, որ ժառանգ. փոփոխականությունն օրինաչափ է և կանոնակարգված (օր.՝ հոմոլոգ. շարքերով), իսկ բնական ընտրությունն էվոլյուցիա չի խթանում, այլ ընդամենը «պահպանում է նորման»:

ՆՈՄՈԳՐԱՖԻԱ (< հուն. nomos – օրենք և ...*գրաֆ*), մաթ. բաժին. ուսումնասիրում է հատուկ գծագրերի՝ նոմոգրամների տեսությունը և կառուցման եղանակները, որոնց միջոցով առանց հաշվումներ կատարելու հնարավոր է ստանալ հավասարումների մոտավոր լուծումները կամ ֆունկցիաների մոտավոր արժեքները:

ՆՈՅ (երբ.՝ Նոախ), աստվածաշնչյան նահապետ, որին Աստված փրկել է Համաշխ. ջրհեղեղից՝ մարդկային ցեղը շարունակելու նպատակով: Ն. ու իր ընտանիքը և կենդանիների բոլոր տեսակները փրկվել են վաղօրոք կառուցված ***Նոյյան տապանով***: Ջրհեղեղից հետո Աստված ուխտ է կնքել Ն–ի հետ, օրհնել է նրա հետնորդներին ու խոստացել այլևս չոչնչացնել կենդանի էակներին: Ըստ ***Թալմուդի***՝ ուխտը ներառել է 7 պատվիրան (կռապաշտության, արյունահեղության արգելք ևն), որոնք հուդայականության մեջ համարվում են ողջ մարդկության համար պարտադիր: Մահմեդականության մեջ Ն. համարվում է մարգարե:

«ՆՈՅԵԱՆ ԱՂԱՒՆԻ», քաղ., ազգ., բանասիր., առևտրային շաբաթաթերթ (1852–53, Կ. Պոլիս): Խմբ–ներ՝ Գրիգորիս Մարկոսյան, Սահակ Ապրոյանց, Նիկողայոս Զորյան:

«ՆՈՅԵՄԲԵՐ», գր. միություն: Հիմնադրվել է 1925–ին Երևանում՝ ***«Հոկտեմբեր»*** (Լենինական) գր. միավորման հիմքի վրա: Նախագահը և հռչակագրի հեղինակը Եղիշե ***Չարենցն*** էր, որի անունով երբեմն կոչվել է Չարենցի հոսանք: 1926–ին միավորվել է ***Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի*** հետ՝ ստեղծելով ***Հայաստանի պրոլետարական գրողների միությունը***:

«ՆՈՅԵՄԲԵՐ», գր., հաս–քաղ. ամսագիր (1932, Երևան): ՀԳՄ հրտ–յուն: Խմբ.՝ Եղիա Չուբար, խմբագր. խորհուրդ՝ Վահրամ Ալազան, Ակսել Բակունց, Շիրվանզադե, Եղիշե Չարենց, Խորեն Սարգսյան, Արտաշես Ոսկերչյան:

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ (մինչև 1938–ը՝ Բարաթա), ք. (1995–ից) ՀՀ Տավուշի մարզում՝ Երևանից 185 *կմ* հս–արլ.՝ Գուգարաց լ–շղթայի արլ. լանջին: Բն.՝ 5,5 հզ. (2012): Զարգացած են անասնաբուծությունը և դաշտավարությունը: 2011–ին օծվել է Սբ Աննա եկեղեցին: Շրջակայքում են հին եկեղեցու ավերակներ, Աշկավանքը (XIII դ.), Սբ Սարգիս եկեղեցին, մ. թ. ա. II–I հզ–ամյակների դամբարաններ, մ. թ. ա. II հզ–ամյակի կիկլոպյան ամրոցներ ևն:

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԲԵՆԹՈՆԻՏԱՅԻՆ ԿԱՎԵՐԻ ԵՎ ՑԵՈԼԻԹՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐ, ՀՀ Տավուշի մարզում՝ Բերդավան գ–ից 3–8 *կմ* հս–արլ.: Հետախուզման աշխ–ներն սկսվել են 1960–ին (ընդհատումներով շարունակվել մինչև 1978–ը), ցեոլիթներինը՝ 1972–ին: Տեղաբաշխված է 4 տեղամասում: Հանքամարմնի հաստ.՝ 0,5–100 *մ*, ցեոլիթինը՝ 8–80 *մ*: Բենթոնիտ. կավերի հեռանկարային պաշարները շուրջ 300 մլն *տ* են, ցեոլիթներինը՝ 520 մլն *տ*:

«ՆՈՅԵՎ ԿՈՎՉԵԳ» («Ноев ковчег» – «Նոյյան տապան»), ազգ., հաս–քաղ., մշակութ. երկշաբաթաթերթ (1997–ից, Քիշնև, 2000–ից՝ Մոսկվա՝ ռուս.): Հիմնադիր–խմբ.՝ Գրիգոր Անիսոնյան:

ՆՈՅՄԱՅԵՐ (Neumeier) Ջոն (ծ. 1942), բալետի ամերիկացի արտիստ, բալետմայստեր: 1969–73-ին՝ Մայնի Ֆրանկֆուրտի բալետ. թատերախմբի, 1973-ից՝ Համբուրգի բալետի ղեկ.: Բեմադրել է Պ. Ի. Չայկովսկու «Շչելկունչիկ» (1971), «Ամառային գիշերվա երազը» (երաժշտությունը՝ Ֆ. Մենդելսոնի և Դ. Լիգետիի), «Կամելիազարդ տիկինը» (1978, երաժշտությունը՝ Ֆ. Շոպենի), Ա. Գ. Շնիտկեի «Պեր Գյունտ» (1989) և այլ բալետներ:

ՆՈՅՄԱՆ (Neumann) Բալթազար (1687–1753), գերմանացի ճարտ.: Շինություններին (եպս–ի՝նստավայրը Վյուրցբուրգում, 1719–53, ևն) բնորոշ են կառուցվածք. հզորությունը, համարձակ լուծումները, ինտերիերների հարուստ հարդարանքը:

ՆՈՅՄԱՆ, Նայման, Կառլ Ֆրեդերիկ (1790–1870), գերմանացի հայագետ, արևելագետ, պատմաբան (ծագումով՝ հրեա): Հեղինակ է «Հայոց լեզուն և նրա մատենագիտությունը. I դարաշրջան» (1826) հոդվածի, «Եզնիկ Կողբացի» (1834), «Ներսես Լամբրոնացի. ֆեոդալական իրավունք...» (1834), «Փորձ հայ գրականության պատմության՝ Մխիթարյանների գործերի հիման վրա» (1836), «Հայերը և Հայաստանը» (1845) հայագիտ., «Բուդդայական, չինական և հինդուիստական քարոզիչների ուխտագնացությունները» (1833) արևելագիտ. աշխ–ների:

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ, Ծննդոց գրքում (գլուխ 6–9) և ավելի ուշ գրառված Ղուրանում (Հուդի և Ալ–Մումինուի սուրաներ) նկարագրված նավ: Ըստ Աստվածաշնչի՝ *Նոյ* նահապետն այն կառուցել է Ատծու հրամանով, որպեսզի ինքն ու իր ընտանիքը և երկրի կենդանիները փրկվեն Համաշխ. մեծ ջրհեղեղից: Ջրհեղեղից հետո տապանը հանգրվանել է Արարատ լ–ան վրա:

«ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ», լրատվավերլուծ. կենտրոն, լրատվ., հրտչ., գովազդ. գործակալություն: Ստեղծվել է 1991–ին Երևանում: Հիմնադիր–տնօրենն՝ Տիգրան Հարությունյան:

ՆՈՅՏՐԱ (Neutra) Ռիխարդ (1892–1970), ամերիկացի ճարտ.: Նրա կառույցներին («Առանձնատուն տափաստանում», 1946–47, Կալիֆոռնիա, ևն) բնորոշ են կապը շրջակա միջավայրի հետ, ազատ կոմպոզիցիան, երկաթբետոնե սալիկների ևնի օգտագործման վարպետությունը:

ՆՈՆԱ (լատ.՝ nona – իններորդ), 1. ***ինտերվալ, դիապոնիկ*** գամմայի որևէ հնչյունի և նրանից հաշված 9–րդ աստիճանի հարաբերակցությունը: Նշանակվում է 9 թվանշանով: Տարբերում են Ն–ի մեծ, մեծացված, փոքրացված տեսակներ: Բաղադրյալ ինտերվալ է՝ կազմված ***օկտավայից*** և ***սեկունդայից***: 2. Դիատոնիկ հնչյունաշարի IX աստիճանը:

ՆՈՆԱԿՈՐԴ, հնգահնչյուն, ակորդ՝ կազմված 5 (որոշ դեպքերում՝ 4, կոչվում է թերի Ն.) տարբեր բարձրության հնչյուններից, որոնք դասավորված են (կամ կարող են դասավորվել) տերցիաներով (հիմքի և գագաթի միջև՝ մեծ կամ փոքր նոնա ***ինտերվալ***): Նշանակվում է 9 թվանշանով: Առավել գործածական է դոմինանտ. Ն. (V9 կամ D9): Տես նաև ***Ակորդ***:

ՆՈՆԵԾՎԻԼԻ Իոսեբ Էլիոզի (1918–1980), վրացի բանաստեղծ: Հեղինակ է «Տաբիներ և բանաստեղծություններ» (1977), «Նվիրում» (հայ.՝ 1986), «Քնարերգություն» (1966), «Լինենք սրտաբաց» (հայ.՝ 1972) և այլ բանաստեղծությունների ժող–ների, «Վրաստանի արարումը» (1971) շարքի, «Պատմություն մի աղջկա մասին» (1952) և այլ պոեմների: Թարգմանել է նաև հայ բանաստեղծների գործերից, գրել «Հայաստանում» (1953, հայ.՝ 1955) շարքը:

ՆՈՆԵՏ (իտալ.՝ nonetto, < լատ. nonus – իններորդ), 1. 9 կատարողից բաղկացած վոկալ կամ գործիք. անսամբլ: 2. ***Սոնատային ձևով*** գրված երաժշտ. ստեղծագործություն՝ 9 (հազվադեպ՝ 9 երգչաձայնի) գործիքի համար: Երևան է եկել XIX դ–ում (Լ. Շպոռ, Ֆ. Լախներ, Չ. Ստանֆորդ, Յ. Ռեյնբերգեր և ուր.):

ՆՈՈՍՖԵՐԱ (< հուն. noos – բանականություն և ...***աֆերա***), կենսոլորտի նոր էվոլյուցիոն վիճակ, երբ մարդու բանական գործունեությունը դառնում է կենսոլորտի զարգացման որոշիչ գործոն: Հասկացությունն առաջարկել են ֆրանս. գիտնականներ Է. Լերուան և Պ. Տեյար դե Շարդենը (1927): Վ. Ի. ***Վեռնադսկին*** զարգացրել է Ն–ի մասին պատկերացումները՝ որպես բնության և հաս–յան փոխազդեցության արդյունքում ստեղծված համակարգի կազմակերպման որակ. նոր ձև, որը գիտ. մտքի հիմքի վրա վերափոխում է մարդու ստեղծագործ. գործունեության աշխարհը:

ՆՈՍՈՎ Եվգենի Իվանովիչ (1925–2002), ռուս գրող: Սոց. աշխ. հերոս (1990): Ստեղծագործությունները հիմնականում նվիրված են ժամանակակից գյուղին և ՀՄՊ–ին: Հեղինակ է «Հաղթանակի կարմիր գինին» (1971), «Աղմկում է մարգագետնի շյուղախոտը» (1966), «Նոթատետրից» (1985) քնար. պատմվածքների, «Ուսվյատիի սաղավարտակիրները» (1977) և այլ վիպակների: Հայ. հրատարակվել է «Աֆրոդիտեի տաճարը» (1986) պատմվածքների ժող–ը:

ՌԽՖՍՀ Մ. Գորկու անվ. Պետ. մրց. (1975):

ՆՈՍՈՎ Նիկոլայ Նիկոլաևիչ (1908–1976), ռուս գրող, սցենարիստ: Հեղինակ է «Վիտյա Մալեևը դպրոցում և տանը» (1951, հայ.՝ 1953), «Վիպակ իմ ընկեր Իգորի մասին» (1972) մանկ. վիպակների, «Անգետիկի և նրա ընկերների արկածները» (1954, հայ.՝ 1958) հեքիաթի (հետագայում՝ եռերգություն), նաև պատմվածքների, պիեսների: Ն–ի բազմաթիվ գործեր («Բլրակի վրա», 1952, «Պատմվածքներ», 1955, «Ֆանտազյորները», 1959, և այլ ժող–ներ) թարգմանվել են հայ.:

ԽՍՀՄ (1952), ՌԽՖՍՀ Ն. Կ. Կրուպսկայայի անվ. (1969) Պետ. մրց–ներ:

ՆՈՍՏՈԿ (Nostoc), ցիանաբակտերիաների ցեղ: Գաղութ. օրգանիզմներ են: Հայտնի է մոտ 40 տեսակ: Ապրում են քաղցրահամ ջրերում, խոնավ ժայռերի վրա և հողում (որոշ տեսակներ յուրացնում են մթն. ազոտը): Արլ. Ասիայի երկրներում Ն. օգտագործում են սննդի մեջ:

ՆՈՍՏՐԱԴԱՄՈՒՍ (Միշել Նոթրդամ, լատինացված՝ Nastradamus, Michel de Notredam, 1503–1566), ֆրանսիացի բժիշկ և աստղագուշակ, Կառլոս IX–ի պալատ. բժիշկը: Հայտնի է դարձել որպես «Հարյուրամյակ» (հրտ.՝ 1555, գրված է քառյակներով՝ կատրենների ձևով) աշխ–յան հեղինակ, որը պարունակում է Եվրոպայի պատմության ապագայի կանխագուշակություններ:

ՆՈՎԱ ԻԳՈՒԱՍՈՒ (Nova Iguaçu), ք. Բրազիլիայում, Մեծ Ռիո դե Ժանեյրոյի կազմում: Բն.՝ 1,1 մլն (2010):

ՆՈՎԱԿ Գրիգորի Իրմովիչ (1919–1980), ռուս ծանրամարտիկ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1945), ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1969): Առաջին խորհրդ. աշխարհի չեմպիոնը (1946), 1939–52-ին՝ ԽՍՀՄ բազմակի չեմպիոն և աշխարհի ռեկորդակիր (տարբեր քաշ. կարգերում): 1952-ից՝ կրկեսի արտիստ:

ՆՈՎԱԿ Վիտեզսլավ (1870–1949), չեխ կոմպոզիտոր: ՉՍՍՀ ժող. արտիստ (1945): Չեխ. երաժշտ. մանկավարժության հիմնադիրներից: Հեղինակ է 4 օպերայի («Լապտեր», 1923, ևն), 2 բալետ–մնջախաղի (բեմ.՝ 1930), «Աշնանային սիմֆոնիայի» (1934), «Մայիսյան սիմֆոնիայի» (1945), սիմֆ. պոեմների, նախերգանքների, սյուիտների, դաշնամուրի կոնցերտի, կամեր–գործիք. անսամբլների, ժող. երգերի մշակումների:

«ՆՈՎԱՅԱ ԺԻԶՆ» («Новая жизнь» – «Նոր կյանք»), 1. Ռուսաստանում բոլշևիկյան 1–ին լեգալ թերթը (1905, Ս. Պետերբուրգ): Լույս է ընծայվել 28 համար. 15–ը բռնագրավել է պետությունը, արգելել: 2. Ռուս. հաս–քաղ. օրաթերթ (1917–18, Պետրոգրադ): Մենշևիկ–ինտերնացիոնալիստների և «Լետոպիս» հանդեսի հրապարակախոսների հրտ–յուն: Կառ–յունն արգելել է, 1917–ին լույս է տեսել «Սվորոդնայա ժիզն» անվանումով (1918–ին՝ նաև Մոսկվայում): Փակել են բոլշևիկները:

ՆՈՎԱՐԱ (Novara), ք. Իտալիայի Պիեմոնտ մարզում, համանուն գվո–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 104,4 հզ. (2015):

ՆՈՎԳՈՐՈԴԻ ՄԱՐԶ, վտմ ՌԴ–ում: Տարածքը՝ 55,3 հզ. *կմ*^{2}, բն.՝ 612,8 հզ. (2017): Վարչ. կենտրոնը՝ ***Մեծ Նովգորոդ***:

«ՆՈՎԳՈՐՈԴՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ», Նովգորոդի հանրապետության հնագույն տարեգրությունը, կարևոր սկզբնաղբյուր է Նովգորոդի հաս–քաղ. կյանքի, կենցաղի և մշակույթի մասին: Հայտնի է 2 խմբագրությամբ. 1–ինում՝ մինչև 1330–ական թթ–ի, 2–րդում մինչև 1443–46 թթ–ի իրադարձություններն են:

ՆՈՎԵԼ (իտալ.՝ novella – բառացի՝ նորություն), **նորավեպ**, գր. ժանր, փոքրածավալ արձակ գործ, պատմվածքի տեսակ, որն ունի սյուժե և կերպարներ: Ն–ին բնորոշ են անսովոր սյուժեն, սուր բախումը, գործողության արագ զարգացումը և անսպասելի, կտրուկ վախճանը: Չևավորվել է Վաղ Վերածննդի շրջանում (Ջ. Բոկաչչո, «Դեկամերոն»): Նշանավոր նովելիստներ են Գի դը Մոպասանը, Օ'Հենրին, Ա. Պ. Չեխովը, Գ. Ջոհրապը («Ռեհան», «Ճիտին պարտքը», «Զաբուղոն» ևն), Ս. Զորյանը («Վճռական մարդը», «Պապն ու թոռը» ևն) և ուր.:

ՆՈՎԵԼԵՏՏ (իտալ.՝ novelletta – փոքր պատում), քնար–պատմող., դրամատիկ. կամ ժանր. բնույթի փոքրածավալ երաժշտ. երկ: Տերմինը գործածել է Ռ. Շումանը (Ն. դաշնամուրի համար, երկ 21, 1838, անվանումը՝ անգլիացի երգչուհի Կլարա Նովելլոյի ազգանունից): Ն–ներ գրել են Ն. Գադեն, Կ. Ռեյնեկեն, Զ. Ֆիբիխը, Ֆ. Պուլենկը, Մ. Ա. Բալակիրևը, Ա. Կ. Գլազունովը և ուր.:

ՆՈՎԵԼԼԻ (Novelli) Էրմետե (1851–1919), իտալացի դերասան: 1884–ից ունեցել է սեփ. թատերախումբը: Խաղացել է Կ. Գոլդոնիի պիեսներում: Դերերից են՝ Կուզովկի (Ի. Ս. Տուրգենևի «Գիշերօթիկը»), Շայլոկ (Վ. Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը»), Կորրադո (Պ. Զակոմետտիի «Ոճրագործի ընտանիքը»), Քին

(Ա. Դյումա-հոր «Հանճար և անառակություն») ևն: Ն-ին աշակերտել է Վահրամ *Փափազյանը*:

ՆՈՎԵՆՑ Գալյա Խաչատուրի (1937–2012), դերասանուհի: ՀՀ ժող. արտիստ (2007): Երվանդ *Ղազանչյանի* կինը, Հակոբ *Ղազանչյանի* մայրը: Եղել է Գյումրիի, ԵԴԹ-ի, Երևանի Գ. Սունդուկյանի անվ., Համազգ. (1993-ից) թատրոնների դերասանուհի: Ն-ի դերակատարումներին բնորոշ են ազգ. վառ նկարագիրը, հոգեբ. հավաստի վերլուծությունը (Մարգարիտ՝ Շիրվանզադեի «Պատվի համար», Մատիբո՝ Գ. Լորկայի «Բեռնարդա Ալբայի տունը», Քեթևան՝ Գ. Սունդուկյանի «Խաթաբալա», Միսիս Սևիջ՝ Ջ. Պատրիկի «Տարօրինակ միսիս Սևիջը», ևն): Նկարահանվել է կինոյում («Բարև, ես եմ», 1965, «Նահապետ», 1977, «Մեր մանկության տանգոն», 1982, բոլորը՝ Հայֆիլմ, ևն):

Մինսկի համամիութ., Վենետիկի միջազգ. կփ-երի դափնեկիր (1985), ՀԽՍՀ Պետ. (1985), ՀԹԳՄ «Արտավազդ» (2008) մրց-ներ, ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» (2012) շքանշան, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (1998):

ՆՈՎԵՐ (Noverre) Ժան Ժորժ (1727–1810), ֆրանսիացի բալետմայստեր, բարեփոխիչ, պարարվ-ի տեսաբան: Բեմադրել է 80-ից ավելի բալետներ: Ֆրանս. լուսավորիչների գեղագիտ-յան հիման վրա ստեղծած ներկայացումներում բովանդակությունը բացահայտել է արտահայտիչ պլաստիկ. կերպարներով, բալետը դարձրել բեմ. արվ-ի ինքնուրույն տեսակ: Հեղինակ է «Նամակներ պարի և բալետների մասին» (1759) գրքի:

ՆՈՎԻ (Novi), ք. Իտալիայի Ալեսսանդրիա պրովինցիայի հվ-արլ-ում: Բն.՝ 28,6 հզ. (2008): Իտալ. արշավանքի ժամանակ ռուս. և ավստր. զորքերը Ա. Վ. *Սուվորովի* հրամանատարությամբ 1799-ի օգոստ. 4 (15)-ին Ն-ի մոտ ջախջախել են գեն. Ժուբերի ֆրանս. բանակը, որը նահանջել է Ջենովա:

«ՆՈՎԻ ՄԻՐ» («Новый мир» – «Նոր աշխարհ»), ռուս. գր-գեղ., հաս-քաղ. հանդես (1925-ից, Մոսկվա): Խմբ-ներ՝ Ա. Վ. Լունաչարսկի, Յ. Մ. Ստեկլով, Ի. Ի. Սկվորցով-Ստեպանով, Վ. Պ. Պոլոնսկի, Կ. Մ. Սիմոնով, Ա. Տ. Տվարդովսկի, Վ. Ա. Կոսոլապով, Ս. Ս. Նարովչատով, Վ. Վ. Կարպով, Ա. Վ. Վասիլևսկի (1998-ից):

ՆՈՎԻ ՍԱԴ (Novi Sad), ք. Սերբիայում, Վոևեոդինա տարածաշրջանի վարչ. կենտրոնը, նվինգստ՝ Դանուբի ափին: Բն.՝ 200 հզ. (2010):

ՆՈՎԻԿՈՎ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (1900–1976), խորհրդ. ավիացիայի գլխ. մարշալ (1944): ԽՄ կրկնակի հերոս (1945): ՀՄՊ-ի ժամանակ՝ ռազմաճակատների ՌՕՈՒ-ի, 1942–46-ին՝ Կարմիր բանակի ՌՕՈՒ-ի հրամ.: 1946–53-ին բանտարկվել է «օդաչուների գործով»: Արդարացվել է, վերականգնվել է զինվ. կոչումը: 1953–55-ին՝ Հեռավոր գործողության ավիացիայի հրամ.:

ՆՈՎԻԿՈՎ Անատոլի Գրիգորևիչ (1896–1984), ռուս կոմպոզիտոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1970): Սոց. աշխ. հերոս (1976): Հեղինակ է երաժշտ. կոմեդիաների («Վասիլի Տյորկին», 1971), երգերի («Թխադեմ աղջիկը», 1944, «Ուղիներ», «Ռուսաստան», երկուսն էլ՝ 1946, ևն) և այլ գործերի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1948):

ՆՈՎԻԿՈՎ Իգոր Ալեքսանդրովիչ (1929–2007), ռուս մարզիկ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1957), ԽՍՀՄ և ՀՀ վ. մ., ՀՀ ֆիզկուլտուրայի և ս. վ. գ. (1969): Օլիմպ. խաղերի (1956, 1964), աշխարհի (1957–62) և ԽՍՀՄ (1953–64) բազմակի չեմպիոն՝ ժամանակակից հնգամարտի անհատ. և թիմ. հաշվարկում: Ժամանակակից հնգամարտի և բիաթլոնի միջազգ. միության նախագահ (1988–92), 1993-ից՝ պատվ. նախագահ:

ՆՈՎԻԿՈՎ Պյոտր Սերգեևիչ (1901–1975), ռուս մաթեմատիկոս: Մաթ. տրամաբ-յան դպրոցի հիմնադիրը: Ս. Պ. *Նովիկովի* հայրը: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1960): Աշխ-ները վերաբերում են բազմությունների տեսությանը, մաթ. տրամաբ-յանը, ալգորիթմների, խմբերի տեսություններին: Լենինյան մրց. (1957):

ՆՈՎԻԿՈՎ Սերգեյ Պետրովիչ (ծ. 1938), ռուս մաթեմատիկոս: ՌԳԱ ակադ. (1981): Պ. Ս. *Նովիկովի* որդին: Աշխ-ները վերաբերում են երկրչփ-յանը, *տոպոլոգիային*, հարաբերականության տեսությանը: Լենինյան մրց. (1967), Ջ. Ֆիլդսի անվ. ոսկե մեդալ և մրց. (1970):

ՆՈՎԻԿՈՎ Սերգեյ Սերգեևիչ (1909–1979), ռուս քիմիկոս-օրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1974): Աշխ-ները վերաբերում են նիտրամիացությունների, ածխաջրածինների քիմիային և նրանց կատալիտիկ փոխարկումներին: Հաստատել է ցիկլոպենտան. ածխաջրածինների հակաճայթյուն. հատկությունները:

ԽՍՀՄ Պետ. (1946), Լենինյան (1976) մրց-ներ:

ՆՈՎԻԿՈՎ–ՊՐԻԲՈՅ (Նովիկով) Ալեքսեյ Սիլիչ (1877–1944), ռուս գրող: Հեղինակ է ռուս նավաստիների կյանքը պատկերող «Ծովային պատմվածքներ» (1917) ժող-ի, «Ծովն է կանչում» (1919) վիպակի, «Սուզանավորդները» (1923) վեպի, 1904–05-ի ռուս-ճապոն. պատերազմի ժամանակ ռուս. նավատորմի արշավանքի և կործանման մասին «Ցուսիմա» (մաս 1, 2, 1932, 1935, հայ.՝ հ. 1, 2, 1934, 1936) պատմ. դյուցազներգության: Հայ. հրատարակվել են նաև «Խոզի պատճառով» (1930), «Ճահճուտում» (1940) պատմվածքները, «Կինը ծովում» (1972) վիպակների ժող-ը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941):

ՆՈՎԻՆՍԿԻ Սստիսլավ Ալեքսանդրովիչ (1841–1914), ռուս անասնաբույժ: Աշխարհում առաջինն է կատարել (1876–77) չարորակ ուռուցքների պատվաստում շներից շան ձագերին, հիմնադրել փորձարար. ուռուցքաբանությունը:

ՆՈՎՈԴԵՎԻՉԻ ՄԵՆԱՍՏԱՆ, կուսանոց Մոսկվայում: Հիմնադրել է իշխան Վասիլի III-ը 1524-ին: 1871-ից գործել է որպես որբերի ապաստան-վարժարան: 1922-ին Ն. մ-ի տեղում հիմնադրվել է թանգարան, 1994-ին մի մասում վերականգնվել է կուսանոցը: Համալիրում են Սմոլենսկի տաճարը (XVI դ.), սեղանատունը (1685–87), զանգակատունը (1689–90), բնակելի, տնտ. և եկեղեց. շինություններ (XVII դ.): Գրանցվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխ. մշակույթ. ժառանգության ցանկում:

ՆՈՎՈԺԻԼՈՎ Գենրիխ Վասիլևիչ (ծ.1925), ռուս ավիակոնստրուկտոր: ՌԳԱ ակադ. (1984): Սոց. աշխ. հերոս (1971,1981): Ս. Վ. Իլյուշինի անվ. ԿԲ-ի գլխ. կոնստրուկտոր (1970): Ն-ի ղեկավարությամբ ստեղծվել են Իլ-76Տ տրանսպորտ., Իլ-76, -96–300 մարդատար և այլ ինքնաթիռներ: Լենինյան մրց. (1970):

ՆՈՎՈԿԱԻՆ [< լատ. novus – նոր (կո)կաին], ցավազրկող դեղամիջոց, պարաամինաբենզոյական թթվի երկէթիլամինաէթիլեթերի հիդրոքլորիդը: Լուծույթներն օգտագործում են տեղային անզգայացման (տես *Ցավազրկում*), նովոկաին. շրջափակումների, հիպերտոնիկ հիվանդության, արյան անոթների կծկանքի, էկզեմայի, այրվածքների, աթերոսկլերոզի բուժման, նաև որոշ հակաբիոտիկների (օր.՝ պենիցիլինի) նոսրացման համար:

ՆՈՎՈԿՈՒՉՆԵՑԿ, ք. ՌԴ Կեմերովոյի մարզում՝ Տոմ գետի ափին: Բն.՝ 551 հզ. (2015): Երկթղ. հանգույց է: Արդյունահանվում է քարածուխ: Հիմնադրվել է 1617-ին:

«ՆՈՎՈՅԵ ՎՐԵՄՅԱ» («Новое время» – «Նոր ժամանակ»), 1. ռուս. հաս-քաղ. օրաթերթ (1868–1917, Ս. Պետերբուրգ): Սկզբում՝ լիբերալ, 1876-ից՝ պահպանող. ուղղվածության: 1905-ից՝ սևահարյուրակայինների պաշտոնաթերթ: 2. Ռուս. հաս-քաղ. հանդես (1943-ից, Մոսկվա՝ ռուս., անգլ., ֆրանս., գերմ., իսպ., չեխ., լեհ., արաբ.):

«ՆՈՎՈՅԵ ՎՐԵՄՅԱ» («Новое время» – «Նոր ժամանակ»), հաս-քաղ. երկօրյա թերթ (1992-ից, Երևան՝ ռուս.): Հիմնադիր-խմբ. և տնօրեն՝ Ռուբեն Սաթյան:

ՆՈՎՈՌՈՍԻՅՍԿ, ք. (1846–60, 1866-ից) ՌԴ Կրասնոդարի երկրամասում, նվինգստ Սև ծովի ափին, երկթղ. կայարան: Բն.՝ 262,2 հզ. (2015): Գործում են Պետ. ծով. ակադ., ինստ., երկրագիտ. թանգարան: Հիմնադրվել է 1838-ին: Ն-ում ՀՄՊ-ի ժամանակ տեղի են ունեցել անողոք մարտեր: Հերոս քաղաք է (1973-ից):

ՆՈՎՈՌՈՍԻՅՍԿԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, հիմնադրվել է 1865-ին Օդեսայում՝ Ռիշելևյան լիցեյի հիմքի վրա: 1920-ին վերակազմավորվել է, ֆակ-ների հիմքի վրա ստեղծվել են ժողկրթության, ֆիզքիմ., մաթ. և այլ բուհեր: 1933-ին վերաբացվել է որպես Իլյա Մեչնիկովի անվ. Օդեսայի ազգ. համալսարան:

ՆՈՎՈՍԵԼՄԿԻ Սերգեյ Ալեքսանդրովիչ (1872–1953), ռուս վիճակագիր, ժողովրդագիր, ռուս. սան. և ժողովրդագր. վիճակագրության հիմնադիրներից: ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1945): Հիմնադրել է ժողովրդագր. վերլուծության հիմքի վրա բնակչության առողջ. վիճակի համալիր-ուսումնասիրության գիտ. ուղղություն:

ՆՈՎՈՍԵԼՑԵՎ Անատոլի Պետրովիչ (1933–1995), ռուս պատմաբան: ՌԳԱ թղթ. անդամ (1984): 1988–93-ին՝ Ռուսաստանի պատմության ինստ-ի տնօրեն (Մոսկվա): 1975-ից՝ «ԽՍՀՄ տարածքի հնագույն պետությունները» տարեգրքի գլխ. խմբ.: Աշխ-ները վերաբերում են հին և միջնադար. պատմությանը, պատմագրությանը, աղբյուրագիտ-յանը:

ՆՈՎՈՍԻԲԻՐՍԿ, ք. (1903-ից, 1903–26-ին՝ Նովոնիկոլաևսկ) ՌԴ-ում, համանուն մարզի վարչ., Սիբիրի դաշն. օկրուգի կենտրոնը: Նվինգստ՝ Օբի վրա: Երկթղ. հանգույց է: Բն.՝ 1,6 մլն (2015): Զարգացած են մեքենաշինությունը, սև ու գունավոր մետաղագործությունը, քիմ., քիմ-դեղագործ., թեթև, սննդի արդ-յան ճյուղերը, շին. նյութերի արտադր-յունը: Գործում են ջրէկ, ՌԳԱ ՍԲ, «Ակադեմքաղաքում» 25 ԳՀԻ, 13 բուհ (այդ թվում՝ 2 համալսարան, կոնսերվատորիա), թատրոններ, պատկերասրահ, երկրագիտ., երկրբ., կենդբ., Սիբիրի ժողդ-ների պատմության և մշակույթի թանգարաններ: Հիմնադրվել է 1893-ին: Ն-ի մոտակայքում է Կոլցովո գիտաքաղաքը:

ՆՈՎՈՍԻԲԻՐՍԿԻ ՄԱՐԶ, վտմ ՌԴ Սիբիրի դաշն. օկրուգում: Տարածքը՝ 177,8 հզ. *կմ*², բն.՝ 2,8 մլն (2015): Ունի 30 շրջան, 14 քաղաք, 17 քտա: Վարչ. կենտրոնը՝ *Նովոսիբիրսկ*: Կազմավորվել է 28.09.1937-ին: Տարածքի մեծ մասը Արմ-սիբիր. հարթավայրի հվ-արլ. մասում է, արլ-ում հարում է Սալաիր-յան բլրաշարին (բարձր.՝ 510 *մ*): Գլխ. գետն Օբն է: Տարածքի մեծ մասում գերակշռում են փշատերև անտառները (հս-ում) և անտառատափաստանները (հվ-ում):

ՆՈՎՈՍՅՈԼՈՎ Միխայիլ Ալեքսանդրո-վիչ (1864–1938), ռուս հոգևորական-փիլ.: ՌՈՒԽԵ սուրբ (2000): Հրատարակել է «Կրոնական-փիլիսոփայական գրա-դարան» (1902–17) մատենաշարը: Ն. հրաժարվել է ընդունել մետրոպոլիտ Սերգիի հոչակագիրը (1927) և դարձել «կատակոմբային եկեղեցու» իսկ. անդամ, 1929-ին ձերբակալվել է, գնդակահարվել, հետագայում՝ արդարացվել:

ՆՈՎՈՍՅՈԼՈՎԱ Ալեքսանդրա Վասիլևնա (1900–1986), ռուս քիմիկոս-անօրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1970, թղթ. անդամ՝ 1953–ից): Սոց. աշխ. հերոս (1980): Աշխ-ները վերաբերում են հազվագյուտ տար-րերի, հիմնականում՝ բերիլիումի միա-ցությունների քիմիային և կիսահաղորդչ. նյութերին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1948, 1981):

ՆՈՎՈՊԱՍՍԿԻ ՄԵՆԱՍՏԱՆ, տղա-մարդկանց մենաստան Մոսկվայում: XIV–XV դդ-ում եղել է Կրեմլում, 1490-ից՝ Մոսկվա գետի ափին: Նորոգվել է 1991-ին: Համալիրում են Սպասսո–Պրեոբրաժեն-սկի տաճարը՝ սեղանատունը, հիվանդա-սենյակները, վանականների խցերը (բոլո-րը՝ XVII դ.), զանգակատունը (XVIII դ.) ևն:

ՆՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ, երաժշտությունը գրառելու գրաֆիկ. նշանների համա-կարգ: Պահպանված հնագույն օրինակ-ները վերաբերում են մ. թ. ա. IV դ-ին: Տարբերում են տառային (նախ՝ հուն., ապա՝ լատ. այբուբենի հիման վրա), նևմային (հուշագր., գրառվել են խոսք. տեքստի վրա՝ մեղեդիները հիշեցնելու համար), տաբուլատուրա (կարճ գրառում լարավոր կսմթթ., հնագույն ստեղնավոր երաժշտ. գործիքների համար), գծային (մենզուրալ, նոտագրել են բարձրությունը և ռիթմը, մասնավորապես՝ միջնադար. և Վերածննդի շրջանի բազմաձայնությունը գրառելու համար), խառը (տառագծային, որտեղ IX դ-ում նշված բազմաձայնութ-յան առաջին նմուշներն են բարոկկոյի շրջանի գեներալ-բասը և XX դ-ի ջազ. Ն.՝ տառաթվանշանային և գծային գրա-ռումներ համադրությամբ), համակարգչ. (տարբեր ձևաչափերով, այժմ ընդունված է MusicXML ձևաչափը) տեսակները: Պրո-ֆեսիոնալ երաժշտության մեջ առավել տարածված է հնգագծ. տակտ. Ն., որն ար-մատավորվել էր Եվրոպայում (XVII–XVIII դդ.): Տես նաև ***Խազեր, Նոր հայկական ձայնագրություն***:

ՆՈՏԿԵ (Notke) Բեռնտ (մոտ 1440–1509), գերմանացի գեղանկարիչ, քանդ.: Ուշգոթ. ոճով ստեղծել է զոհարանի ծավալ. փայ-տափորագրաքանդակներ (Լյուբեկի տաճարում, 1470–77, Տալլինի Սբ Հոգի եկեղեցում, 1482–83), նաև արտահայ-տիչ կոմպոզիցիաներով գեղանկարներ («Մահվան պարը», 1463/66) ևն:

ՆՈՏՈԳԵԱ (< հուն. notos – հարավ և ge – երկիր), ցամաքի կենդ. թագավորութ-յուն. զբաղեցնում է Ավստրալիան, Նոր Զելանդիան և Օվկիանիայի կղզեխմբե-րը: Ն-ի տևական մեկուսացումը հան-գեցրել է բնաշխարհիկներով հարուստ բուսաշխարհի առաջացմանը. բնորոշ են միանցքանիները, պարկավորները, ոչ մեծ թվով ընկերքավոր կաթնասուններ, թռչնաշխարհից՝ կազուարներ, բազմա-թիվ դրախտաթռչուններ, կիվի ևն:

ՆՈՏՈՏԵՆԻԱՆԵՐ, *պերկեսակերպների* կարգի ծով. ձկների ընտանիք: Երկ.՝ մինչև 90 *սմ*, կ. զ.՝ մինչև 9 *կգ*: Հայտնի է ավելի քան 50 տեսակ՝ անտարկտիկ. և մերձարկ-տիկ. ջրերում: Արդյունագործ. ձուկ է:

ՆՈՏՐԳԻԲ, հայկ. գրատեսակ: Արագա-գիր գրիչ-նոտարների գիրը: *Բոլորգրի* և *շղագրի* որոշ տարրերի համադրման արդյունք է: Հանդիպում է XIII դ–ից, լայ-նորեն տարածվել է XVI–XVIII դդ-ում: Օգ-տագործվում է նաև տպագրության մեջ՝ նկարչ. ձևավորումներում, գիտ. գրկ-յան մեջ՝ ընդգծումների և այլ նպատակներով:

«ՆՈՐ ԱԶԴԱՐԱՐ», ազգ., գր., պատմ. պարբերաթերթ (1950–80, Կալկաթա): Խմբ.՝ Զքեդիա Հանանյան:

«ՆՈՐ ԱԼԻՔ», հաս-քաղ. օրաթերթ (1924–28, Սալոնիկ): ՀՅԴ-ի «Ալիք» օրա-թերթից (1923–27, Սալոնիկ) հեռացած և ռամկավարությանը հարած գործիչների հրտ-յուն: Խմբ-ներ՝ Հ. Տեր-Նիկողոսյան, Գառնիկ Նավասարդյան:

«ՆՈՐ ԱԿՈՍ», գր-գեղ., հաս. շաբաթաթերթ (1924–25, Երևան): Խմբ.՝ Եղիա Չուբար:

«ՆՈՐ ԱԿՈՒՆՔ», ազգ., հաս., մշա-կութ. պարբերաթերթ (2001–10, Երևան՝ «Ակունք», 2011–15, Բորժոմ, Ախալքալաք): Հիմնադիր-խմբ.՝ Մելս Թորոսյան:

«ՆՈՐ ԱՂԲԻՒՐ», մանկապատանեկան գր-գեղ. հանդես (1943–46, Թեհրան): Խմբ.՝ Անդրե Տեր-Օհանյան:

ՆՈՐ ԱՄԲԵՐԴԻ ԴՊՐՈՑ, *ցարրական մասնիկների* ֆիզիկայի հարցերին նվիր-ված տասնօրյա դասընթացներ, որոնք կազմակերպվել են Երևանի ֆիզիկայի ինստ-ի նախաձեռնությամբ՝ Նոր Ամ-բերդի կայանում և Երևանում: Նստա-շրջանները տեղի են ունեցել 1931–66-ին, 1972-ին և 1976-ին: Դպրոցի աշխ-ներին մասնակցել են ԽՍՀՄ ԳԱ ակադ-ներ Վիկտոր *Համբարձումյանը*, Ա. Բ. *Միգ-դալը*, Յ. Բ. *Զելդովիչը*, ԱՄՆ-ից՝ Մ. *Գել-Մանը*, Ջ. Բյորկենը և ուր.:

«ՆՈՐ ԱՅԳ», հաս-քաղ. շաբաթաթերթ (1952–53, Թեհրան): Խմբագրակազմ:

«ՆՈՐ ԱՅԳ», ՀԲԸՄ պաշտոն. ամսաթերթ-տեղեկատու (1978–ից, Մոնրեալ, սկզբում՝ «Տեղեկատու»): Խմբ.՝ Հարություն Էսեկ-յուլյան:

«ՆՈՐ ԱՅՆԹԱՊ», ազգ., հաս., գր. հան-դես (1960–2012, Բոստոն, Բեյրութ, 1962–71-ին՝ «Հայ Անթեպ»): Ամերիկաբնակ (1982-ից՝ լիբանանաբնակ) այնթապցի-ների հայրենակց. միության հրտ-յուն: Խմբ-ներ՝ Գրիգոր Պողարյան, Երվանդ Պապայան, Վարդան Դեմիրճյան, Լևոն Վարդան, Թորոս Թորանյան:

ՆՈՐ ԱՆԳԼԻԱ (New England), ԱՄՆ-ի հս-արլ-ում կազմավորված պատմ. շրջանի անվանումը: Առաջարկել է անգլիացի նավապետ Ջ. Սմիթը (1614): Ներառում է Մեն, Նյու Հեմփշիր, Վերմոնտ, Մաս-սաչուսեթս, Քոնեքթիքութ, Ռոդ Այլենդ նահ-ները: Կենտրոնը՝ *Բոստոն*:

«ՆՈՐ ԱՇԽԱՐՀ», գր-քաղ., հաս. պարբ. (1907–08, Թիֆլիս): Խմբ-հրտ.՝ Գրիգոր Ճեպեյան:

«ՆՈՐ ԱՇԽԱՐՀ», հաս-քաղ. երկշաբա-թաթերթ [1922–23, Ֆիլիպե (Պլովդիվ)]: Բուլղարիայի կոմկուսի հրտ-յուն: Խմբ.՝ Ստեփան Շահբազյան:

«ՆՈՐ ԱՇԽԱՐՀ», հաս-քաղ. և գր. շա-բաթաթերթ (1926–30, Նյու Յորք): Ամե-րիկայի բանվ. (կոմ.) կուս-յան հայկ. հատվածի պաշտոնաթերթ: Խմբ-ներ՝ Պատրիկ Սելյան, Խաչիկ Քյոսեյան, Մարտիկ Մարտենց: *«Պրոլետար»*-ի շա-րունակությունն է:

«ՆՈՐ ԱՇԽԱՐՀ», ազգ. գր. շաբաթաթերթ (1954–73, Բոստոն, ապա՝ Նյու Յորք՝ հայ., անգլ.): Խմբ.՝ Սամուել Թումանյան:

«ՆՈՐ ԱՇԽԱՐՀ», ազգ., մշակութ., հաս. շաբաթաթերթ (1968–ից, Աթենք՝ հուն. հավելվածով): ՌԱԿ-ի Հունաստանի շրջ. վարչության պաշտոնաթերթ: Խմբ-ներ՝ Հակոբ Վարժապետյան, Զավեն Գրիգոր-յան, Տիգրան Աբասյան:

«ՆՈՐ ԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ», բժշկ., գր-հաս. հանդես (1912–15, Թիֆլիս): Խմբ.՝ Երվանդ Մինասյան:

«ՆՈՐ ԱՐԱՔԻԲ», ազգ., պատմ., գր. տե-ղեկատու պարբերաթերթ (1925–74՝ Նյու Յորք, ապա՝ Ֆիլադելֆիա, Ուոթերթաուն, Բոստոն): Ամերիկաբնակ արաբկիրցինե-րի միության կենտր. վարչության, ապա՝ «Արաբկիր» միության կիսամսյա պաշտո-նաթերթ: Խմբ.՝ Գ. Գալստյան:

«ՆՈՐ ԱՐԱՔՔՈ», ազգ., գր., մշակութ. կի-սամսյա թերթ [1945–49, Լառնակա (Կիպ-րոս)]: Խմբ.՝ Հայկ Մոստիչյան:

«ՆՈՐ ԱՐՇԱԼՈՅՍ», ազգ., քաղ., գր. և մշակութ. պարբերաթերթ (1922–34, Բու-խարեստ): Խմբ-ներ՝ Պարույր Լևոնյան, Հակոբ Սիրունի, Լևոն Շաթրյան, Հարութ Ասլանյան (Հորիոն), Վարդան Մեշտուճ-յան, Հարություն Պապյան:

«ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ», կրոնաբարոյական, կրթ., գիտ. պարբ. (1928–34, Հալեպ): Սիրիայի և Լիբանանի հայ ավետարան. միության պաշտոն. հրտ-յուն: Արտոնա-տեր՝ Կարապետ Հարությունյան, տնօրեն-խմբ.՝ Տիգրան Խրլոպյան:

ՆՈՐ ԱՖՈՆ, ք. (1987–ից) Աբխազիայում՝ Սև ծովի ափերին և շրջակա լ-լանջին: Բն.՝ 3,6 հզ. (2010): Մերձծով. կլիմ. առող-ջավայր է: 1875-ին հիմնվել է Նոր Աֆոն վանքը՝ Իվերի լ-ների ստորոտին, որոնց շրջակայքում կան կարստ. քարանձավ-ներ: Զբոսաշրջության վայր է:

ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌ, հայ-ի «ում» ճյուղի բարբառ: Խոսվել է Կամո (Նոր Բայազետ) շրջկենտրոնում, Կարբի գ-ում: Ունի եռաստիճան (բ–պ–փ) բաղաձայն. համակարգ:

ՆՈՐ ԲԱՐՈԿԿՈ, XIX դ-ի 2-րդ կեսի պատմ. ոճերից: Օգտագործել է բարոկկոյի ձև. (ֆորմալ) տարրեր ճարտ-յան մեջ (Շ. Գառնիե, Ա. Ի. Շտակենշնայդեր) և կեր-պարվ-ում (Հ. Մաքարտ):

ՆՈՐ ԲՐԻՏԱՆԻԱ (New Britain), հրաբխ. կղզի Խաղաղ օվկ-ում, ամենամեծը՝ Բիս-մարկի կղզեխմբում (Պապուա–Նոր Գվի-նեայի կազմում): Տարածքը՝ 36,6 հզ. *կմ*², բարձր.՝ 2334 *մ*: Գլխ. ք–ը և նվինգստ–ը՝ *Ռաբաուլ*:

«ՆՈՐ ԳԻՐ», գրկ-յան և արվ-ի ամսագիր (1936–54, Նյու Յորք): Խմբ-ներ՝ Անդրա-նիկ Անդրեասյան, Բենիամին Նուրիկյան:

ՆՈՐ ԳՎԻՆԵԱ (New Guinea, Իրնան), կղզի Խաղաղ օվկ-ում: Տարածքը՝ 829 հզ. *կմ*² (Գրենլանդիայից հետո 2-րդը՝ աշխարհում), այլ տվյալներով՝ 771,9 հզ. *կմ*²: Արմ. մասը՝ Ինդոնեզիայի, արլ. մասը Պապուա–Նոր Գվինեայի տարածք են: Բարձր.՝ մինչև 5030 *մ*, հվ-ում ընդարձակ

ցածրավայր է: Ծածկված է խոնավ արևադարձ. անտառներով, բարձրլեռն. մարգագետիններով, հվ-ում՝ սավաննաներով: Զարգացած են արևադարձ. երկրագործությունը, ձկնորսությունը: Արդյունահանվում է նավթ: Գլխ. նվինգստոն-ներն են Սորոնգը (Ինդոնեզիա), Պորտ Մորաբին, Մադանգը (Պապուա–Նոր Գվինեա):

«ՆՈՐ ԴՊՐՈՑ», մանկավարժ. պարբ. (1908–1914, Թիֆլիս): Կովկասի հայոց դպրոցների ուսուցիչների և վարժուհիների միության կենտր. վարչության հրտ-յուն: Խմբ-ներ՝ Իսահակ Հարությունյան, Հովհաննես Տեր-Միրաքյան, Արտաշես Աբեղյան:

ՆՈՐ ԵՐԿԻՐ, կղզեխումբ Հս. սառուցյալ օվկ-ում (ՌԴ տարածք), Բարենցի և Կարայի ծովերի միջև: Հվ-արմ-ից հս-արլ. ձգվում է մոտ 1000 *կմ*: Բաղկացած է 2 մեծ՝ Հս. և Հվ. (Մարոչկին Շար նեղուցով բաժանված) և բազմաթիվ մանր կղզիներից: Ընդհ. տարածքը՝ 83 հզ. *կմ*^{2}, բարձր.՝ մինչև 1547 *մ* (Հս. կղզում): Տարածքի $^1/_4$-ը ծածկված է մայրցամաք. սառույցով (հիմնականում՝ Հս. կղզում), մնացած մասը՝ արկտիկ. անապատով և տունդրայով:

«ՆՈՐ ԵՐԿԻՐ», հաս-քաղ. և գր. պարբերաթերթ (1926–37, 1954–55, Փարիզ): Հնչակյան կուս-յան Ֆրանսիայի շրջանի պաշտոնաթերթ: Խմբ-ներ՝ Հակոբ Թյուրապյան (Բ. Վարազդատ), Մելիք Դավիթ-Բեկ:

ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ (New Zealand), պետություն Խաղաղ օվկ-ի հվ-արմ-ում՝ Պոլինեզիայում՝ 2 մեծ (Հս. և Հվ.) և շուրջ 700 փոքր կղզիների վրա: Տարածքը՝ 268, 7 հզ. *կմ*^{2}, բն.՝ 4,6 մլն (2014): Մայրաքաղաքը՝ *Վելինգթոն*: Պետ. լեզուները՝ անգլ., մաորի: Կառավարման ձևը՝ միապետ.: Պետության գլուխը Մեծ Բրիտանիայի թագուհին է՝ ներկայացված գեն-նահանգապետով, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Բաժանված է 16 վարչ. տարածաշրջանների և 1 կղզային տարածք. միավորի (Չատեմ կղզիներ): Հավատացյալների մեծ մասը բողոքական է: Անդամակցում է ՄՄԿ-ին, Ազգերի համագործակցությանը, ԱռտՀԿ-ին ևն: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 35 հզ. ԱՄՆ դոլար է (2011): Արտահանում է կաթնամթերք, միս, ձուկ, մեքենաներ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթ, դեղորայք, քիմիկատներ, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ նորզելանդ. դոլար:

1642-ին Ն. Զ. հայտնաբերել է հոլանդացի ծովագնաց Ա. *Թասմանը*, XVIII դ-ի 2-րդ կեսին հետազոտել է Զ. *Կուկը*: XIX դ-ում անգլիացիներն սկսել են Ն. Զ-ի գաղութացումը, իսկ 1840-ին հայտարարել են Մեծ Բրիտանիայի գաղութ: 1843-ին սկսվել է մաորիների պայքարը գաղութարարների դեմ, որ տևել է մինչև 1872-ը, երբ ճնշվել են ապստամբության վերջին օջախները: 1860-ական թթ-ին կղզում ոսկու հայտնաբերումն առաջ է բերել «ոսկու տենդ», որն ուժեղացրել է եվրոպացիների ներգաղթը: 1907-ին Ն. Զ. ստացել է դոմինիոնի կարգավիճակ: ԱՀՊ-ին մասնակցել է Մեծ Բրիտանիայի կողմից, պատերազմից հետո տրվել է (Մեծ Բրիտանիայի ու Ավստրալ. Միության հետ) նախկին գերմ. գաղութ Արմ. Սամոայի և Նաուրու կղզու մանդատ: 1931-ի Վեստմինստերյան ստատուտով Ն. Զ. ստացել է ներքին ու արտաքին գործերի լիակատար ինքնուրույնություն: 1930-ական թթ-ից իշխանության ղեկին հաջորդաբար եղել են Ազգ. կուս-յունը (հիմն.՝ 1936) և լեյբորիստները (1916): 1987-ին Ն. Զ. աշխարհում առաջինը հայտարարել է իր տարածքը միջուկազերծ գոտի: 2011-ից գեն-նահանգապետն է Ջերի Մատեպարաեն:

Հայերի առաջին խմբերը Ն. Զ-ում հաստատվել են ԵՀՊ-ից հետո: Նրանք գաղթել են հիմնականում Եգիպտոսից, Լիբանանից, Իրանից՝ այդ երկրների անկայուն քաղ. կացության հետևանքով: Ներկայում Ն. Զ-ում բնակվում է 600 հայ (համաձայն այլ աղբյուրների՝ 5 հզ.), հիմնականում՝ Օքլենդում և Վելինգթոնում: 1996-ից գործում է Ն. Զ-ի հայկ. միությունը, որի ջանքերով Օքլենդում բացվել է հայկ. կիրակնօրյա դպրոց:

«ՆՈՐ ԷՋ», գր. տարեգիրք (1935–37, 1943, 1958–75, Թեհրան): Համանուն գր. խմբակցության հրտ-յուն: Խմբ-ներ՝ Զոհրայր Միրզայան, Արշավիր Մկրտչյան, Գալուստ Խանենց:

«ՆՈՐ ԹՈՄԱՐՋԱ», ազգ., պատմ., գր. հանդես [1931–35 և 1939–40, Սաութ Միլուոուքի, Ռեյսին (ԱՄՆ)]: Թոմարզայի միացյալ (հայրենակց.) ընկ-յան կենտր. վարչության հրտ-յուն: Խմբ.՝ Վարդան Զալըմենց:

«ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ», ազգ., քաղ. և գր. հանդես (1906, Կահիրե): Խմբ-հրտ.՝ Վահան Թեքեյան:

ՆՈՐ ԻՌԼԱՆԴԻԱ (New Ireland), հրաբխ. կղզի Խաղաղ օվկ-ում՝ Բիսմարկի կղզեխմբում (Պապուա–Նոր Գվինեայի կազմում): Տարածքը՝ 8,6 հզ. *կմ*^{2}, բարձր.՝ 2399 *մ*:

«ՆՈՐ ԼՈՒՅ», ազգ., քաղ., գր. պարբերաթերթ (1924–36, 1945–54, Ստամբուլ): Խմբ.՝ Վահան Թոշիկյան:

«ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ», ազգ., մշակութ. տեղեկատու տարեկան հանդես [1936, 1954, 1956, Սոմերվիլ (ԱՄՆ)]: Համախարբերդցիական միության կենտր. գործադիր մարմնի հրտ-յուն:

ՆՈՐ ԿԱԼԵԴՈՆԻԱ (Nouvelle Colédonie), կղզեխումբ Խաղաղ օվկ-ի հվ-արմ-ում՝ Մելանեզիայում, Ֆրանսիայի անդրծով. տարածք: Կազմված է Նոր Կալեդոնիա մեծ (16,7 հզ. *կմ*^{2}) և մի խումբ մանր կղզիներից: Ընդհ. տարածքը՝ 18,6 հզ. *կմ*^{2}, բն.՝ 227 հզ. (2009): Ազգ. կազմը՝ կանակներ, ֆրանսիացիներ: Քաղաք. բն.՝ 65 %: Հավատացյալները կաթոլիկ և բողոքական են: Պետ. լեզուն՝ ֆրանս.: Վարչ. կենտրոնը՝ *Նումեա*: Վարչականորեն բաժանված է 3 պրովինցիայի: Դրամ. միավորը՝ ֆրանս. խաղաղօվկիանոս. ֆրանկ: Բարձր.՝ մինչև 1628 *մ* (Ն. Կ. կղզում): Ծածկված է նոսր և ասեղնատերև անտառներով: Կառավարում է Ֆրանսիայի Կառ-յան նշանակած գերագույն կոմիսարը: Հայտնագործել է Զ. *Կուկը* 1774-ին և անվանել Շոտլանդիայի հին անունով՝ Կալեդոնիա: 1846-ին ստացել է Ֆրանսիայի «անդրծովյան տարածքի» կարգավիճակ: 1864–96-ին եղել է աքսորավայր: Ն. Կ. նիկելի արդյունահանման և խտահանքի արտադր-յամբ աշխարհի առաջատարներից է: Զարգացած են զբոսաշրջությունը, փայտամշակման, սննդի արդ-յան ճյուղերը, գղտ-յունը, ձկնորսությունը: Գլխ. ծով. նվինգստ-ը՝ Նումեա: Արտահանում է նիկել. հանքանյութ, ֆեռոնիկել, ձկնեղեն: Հիմն. առևտր. գործընկերներն են Ֆրանսիան, Ճապոնիան, Ավստրալիան, Սինգապուրը:

«ՆՈՐ ԿԵԱՆՔ», գր., քաղ., պատմահայագիտ. կիսամսյա հանդես (1898–1902, Լոնդոն): Վերակազմյալ հնչակյան կուս-յան հրտ-յուն: Խմբ-ներ՝ Արփիար Արփիարյան, Լևոն Բաշալյան: 1902-ին միավորվել է *«Հնչակ»*-ի հետ:

«ՆՈՐ ԿԵԱՆՔ», գր., հաս-քաղ., կրթ. հանդես (1906–07, Նոր Նախիջևան): Խմբ-ներ՝ Հ. Խարագյոզյան, Գ. Անոփյան, Սիմոն Վրացյան:

«ՆՈՐ ԿԵԱՆՔ», ազգ., գր., և քաղ. շաբաթաթերթ (1944–47, Մարսել): Հայ ազգ. ճակատի պաշտոնաթերթ: Խմբ.՝ Եղիշե Թորոսյան, Վարդան Թեմուրճյան:

«ՆՈՐ ԿԵԱՆՔ», ազգ., գր., մշակութ. օրաթերթ (1945–47, Աթենք): Հունաստանի Հայ ազգ. ճակատի պաշտոնաթերթ: Խմբ-ներ՝ Վահան Դաքեյան, Մովսես Պազարյան, Աբրահամ Յազըճյան:

«ՆՈՐ ԿԵԱՆՔ», արվ-ի, գրկ-յան, ապա՝ ազգ., ընկեր., տնտ. պարբերաթերթ (1957–73, 1976–78, 1991–98, Բեյրութ): Խմբ-ներ՝ Հրաչ Հաճերյան, Կարո Գազանճյան, Վահան Ճանսըզյան, Սեմ Բագուպյան, Մանվել Գազանճյան:

«ՆՈՐ ԿԵԱՆՔ», ազգ., հաս., կրոն., գր. շաբաթաթերթ (1978–ից, Գլենդել՝ հայ., անգլ., ֆրանս.): Խմբ-ներ՝ Վահան Ճանսըզյան, Աբրահամ Չափարյան, Հրանտ Սիմոնյան, Լևոն Ֆերմանյան, Սարգիս Մաճարյան, Գրիգոր Շենյան (1981–ից):

«ՆՈՐ ԿԵՍԱՐԻԱ», ազգ., պատմ., գր. ամսագիր (1934–37, Նյու Յորք): Կեսարիայի վերաշինաց միության, ապա՝ Նոր Կեսարիայի համագործակցության պաշտոն. հրտ-յուն:

«ՆՈՐ ԿՅԱՆՔ», հաս-քաղ., տնտ., մշակութ. պարբերաթերթ (1950–ից, Բուխարեստ՝ հայ., 1990–ից՝ հայ. և ռում.): Խմբ-ներ՝ Հարություն Պապոյան, Հարութ Ասլանյան (Հորիոն), Տիգրան Տեր-Գրիգորյան, Թագվոր Շիշմանյան, Սարգիս Սելյան (1978–ից):

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ, սուրբ գրքերի ժող., որը *Հին կտակարանի* հետ կազմում է *Աստվածաշունչը*: Ամփոփում է 27 գիրք՝ 4 *Ավետարան*, *Գործք առաքելոց*, առաքյալների 21 նամակ (թուղթ), *Հայտնություն Հովհաննեսի*: Ն. կ. թվագրվում է I դ-ի 2-րդ կես–II դ-ի սկզբով: Վերաբերում է քրիստոնեության շրջանին:

«ՆՈՐ ՀԱՃԸՆ», ազգ., հաս., պատմ., գր. պարբերաթերթ (1928–ից, Մարսել, ապա՝ Լոս Անջելես, Բուենոս Այրես՝ հայ., իսպ., 1928–33-ին՝ «Հաճըն»): Հաճնի հայրենակց. միության կենտր. վարչության պաշտոնաթերթ:

«ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ», ազգ., հաս-քաղ. օրաթերթ (1991-ից, Լոս Անջելես): Հիմնադիր-խմբ.՝ Վահան Վահանյան (Ճանազյան):

«ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ», բժշկագիտ. միջազգ. պարբ. (2007-ից, Երևան, հոդվածները՝ ռուս., անգլ.): ԵՊԲՀ հրտ-յուն: Հիմնադիր-խմբ.՝ Արտո Զիլֆյան:

ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Համարձակության նոտագրություն, Լիմոնճյանի համակարգ, Հայկական նոտագրություն, ստեղծել է Համարձակում *Լիմոնճյանը* (1813, կատարելագործել են Ա. Հովհաննիսյանը և Հ. Սյուհենտիսյանը)՝ վերաձայնագրման միջոցով հայ մոնոդիկ երաժշտությունն օտար ազդեցություններից հետու պահելու համար: Փոխարինել է *խազագրությանը*: Հիմնված է օկտավ. հնչյունաշարի վրա՝ հայ մոնոդիկ

երաժշտության *տևմպերացիայի* առանձնահատկություններին համապատասխան: Բարձր-յան 7 նշաններն արձանագրում են 2 կցված մաժոր *տետրախորդներ* (հավասարաչափ տեմպերացվածից փոքր-ինչ ցած աստիճանով), որոնք կազմում են յուրատեսակ միքսոլիդիական *գամմա*: Ռիթմի գրանցման հիմքը տևողությունների զույգ բաժանումն է: Տևողության նշանները դրվում են բարձր-յան նշաններից վերև, իսկ դադարը՝ նրանց կողքին: Կիրառվել է XIX դ-ում և XX դ-ի սկզբին հայկ., նաև թուրք. երաժշտության մեջ:

«ՆՈՐ ՀԱՅԿԵՔ», մանկապատանեկան գր., մշակութ. հանդես (1935–36, Թեհրան): Արտոնատեր-խմբ.՝ Մարգարիտ Սարվարյան, խմբ.՝ Սուշեղ Սարվարյան:

ՆՈՐ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՈՒԵԼՍ (New South Wales), նահանգ Ավստրալ. Միության հվ-արլ-ում: Տարածքը՝ 801,4 հզ. *կմ*², բն.՝ 7,7 մլն (2016): Վարչ. կենտրոնը՝ *Սիդնեյ*:

ՆՈՐ ՀԵԲՐԻԴՆԵՐ (New Hebrides), կղզեխումբ Մելանեզիայում՝ Խաղաղ օվկ-ի հվ-արմ-ում: Բաղկացած է 80 կղզիներից (12-ը՝ խոշոր): Տարածքը՝ 14,8 հզ. *կմ*²: Բարձր.՝ մինչև 1810 *մ*: Կա մոտ 60 հրաբուխ (10-ը՝ գործող): Մինչև 1980-ի հուլիսի 30-ը Ն. Հ. Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի համատեղ տիրույթն էր, այժմ՝ *Վանուատու* պետության կազմում:

«ՆՈՐ ՀՈՍԱՆՔ», հաս-քաղ., գր-գիտ. ամսագիր (1913–15, Թիֆլիս): Խմբ-հրտ-ներ՝ Արշակ Ղազարյան, Նիկոլ Աղբալյան:

«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ», ազգ., հաս., պատմ. պարբերաթերթ (1994–ից, Ուփսալա՝ հայ. և շվեդ.): Շվեդիայի հայկ. միությունները համադրող կենտրոնի պաշտոնաթերթը: Հիմնադիր-խմբ.՝ Կարո Հակոբյան, խմբ.՝ Կարեն Օհանջանյան:

«ՆՈՐ ՁԱՅՆ», գր., կրթ., հաս-քաղ. շաբաթաթերթ (1911–12, Երևան): Խմբ-հրտ.՝ Վահան Տեր-Աբրահամյան:

«ՆՈՐ ՄԱԼԱԹԻԱ», ազգ., պատմ. տեղեկատու պարբերաթերթ (1939–ից, Նյու Յորք, ապա՝ Ֆիլադելֆիա, Փութաքեթ, Ուստր՝ հայ., անգլ.): Մալաթիայի կրթասիրաց ընկ-յան հրտ-յուն:

«ՆՈՐ ՄԱՄՈՒԼ», հաս., տնտ., գր., մշակութ. պարբերաթերթ (1911–15, Երևան, 1911–13-ին՝ «Կռան»): Խմբ.՝ Սուշեղ Բագրատունի:

«ՆՈՐ ՄԱՐԱՇ», ազգ., պատմ. տարեգիրք (1946–61, Հալեպ): Մարաշի հայրենակց. միության հրտ-յուն:

«ՆՈՐ ՅԱՌԱՋ», ազգ., հաս-քաղ., մշակութ. շաբաթաթերթ [2009–ից, Փարիզ՝ հայ., *«Յառաջ»* (1925–2009) օրաթերթի շարունակությունը]: Հիմնադիր-խմբ.՝ Ժիրայր Չոլաքյան:

«ՆՈՐ ՅՈՅՍ», հաս-քաղ., արվ-ի շաբաթաթերթ (1935–36, Ստամբուլ): Տնօրեն՝ Գրիգոր Մակար, խմբ.՝ Օննիկ Չաթալյան:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆ, հայկ. գաղթավայր Ռուսաստանում: Հիմնադրել են Ղրիմից տեղափոխված հայերը (12 600) 1779-ին Դոնի աջ ափին՝ Սբ Դմիտրի Ռոստովսկի ամրոցի (այժմ՝ *Դոնի Ռոստով*) մոտ: Շրջակայքում հիմնադրված Չալթր, Թոփթի, Մեծ Սալա, Սուլթան Սալա, Նեսվիտա գ-երը կազմել են գաղութի անբաժան մասը: *Եկատերինա II* կայսրուհու հրովարտակով գաղութահայերը 10 տարով ազատվել են հարկերից, ստացել մի շարք իրավունքներ ու արտոնություններ: Ի դեմս հայկ. մագիստրատի (մարմնավորել է տեղի դատ., ոստիկան. և գործադիր իշխանության իրավունքները)՝ գաղութն ստացել է ինքնավարություն: 1811-ին հաստատվել է Ն. Ն-ի զինանշանը: XVIII դ-ի վերջին կառուցվել են Սբ Խաչ վանքը, Սբ Լուսավորիչ և քաղաքի մյուս 5 եկեղեցիները, հիմնադրվել են դպրոցներ, տպարան: XX դ-ի սկզբից Ռոստովի հետ կազմել է առևտրատնտ. ու վարչ. ամբողջություն: 1895-ին Ն. Ն. դարձել է Հայ եկեղեցու Ն. Ն-ի և Բեսարաբիայի թեմի կենտրոն: Տարբեր տարիների գաղութում լուսավոր-մշակութ. գործունեություն են ծավալել Հ. Ալամդարյանը, Հ. Արղությանը, Մ. Նալբանդյանը, Գ. Չալխուշյանը, Գ. Պատկանյանը, Ռ. Պատկանյանը և ուր.: Հրատարակվել են «*Նոր կյանք*», «*Մեր ձայնը*», «*Լույս*», «*Գաղութ*» պարբերները: 1930-ական թթ-ին Ն. Ն. դարձել է Ռոստով բ-ի Պրոլետար. շրջանը, շրջակա գյուղերը մտել են Ռոստովի մարզի Միասնիկյանի շրջանի մեջ: Ներկայում գործում է «Անի» հայկ. մշակութ. ընկ-ը, հրատարակվում «Անի» թերթը (հայ. և ռուս.):

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑ, հիմնադրվել է 1880-ին՝ չունևորների զավակների համար՝ քառամյա ծրագրով, անվճար: Հիմնադիր-տեսուչ՝ Ռափայել *Պատկանյան*: Իր տեսակով առաջինն էր հայ իրականության մեջ: Սովորեցրել են տարբեր արհեստներ, դասավանդել նաև հանրակրթ. առարկաներ: Գործել է մինչև 1919-ը:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԲԱՐԲԱՌ, հայ-ի «կր» ճյուղի բարբառ: Խոսվել է նախ՝ Ղրիմում, ապա՝ Նոր Նախիջևանում և շրջակա 5 գյուղերում: Ունի երկաստիճան խլազուրկ (ր–փ) բաղաձայն. համակարգ:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑ, հիմնադրվել է 1875-ին՝ որպես չորսդասյա հոգևոր ուսումնարան: 1881-ին վերածվել է թեմ. հոգևոր սեմինարիայի: XX դ-ի 1-ին քառորդում Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի միակ ազգ. միջնակարգ դպրոցն էր: Փակվել է 1920-ին:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ, ձևավորվել է 1830-ական թթ-ի վերջին՝ մանկավարժներ Թեոդորոս Խատանյանի և Սարգիս Տիգրանյանի նախաձեռնությամբ: 1879–1919-ին գործել է «Դրամատիկական արվեստը սիրողների ընկերությունը» (նախագահներ՝ Հ. Խատանյան, Գ. Չուբար), 1899-ին կառուցվել քաղաք. թատրոնի շենքը: Թատրոնում ելույթներ են ունեցել Պ. Աղամյանը, Հ. Աբելյանը, Սիրանույշը, Ի. Ալիխանյանը, Վ. Փափազյանը և ուր., բեմադրվել են Գ. Սունդուկյանի, Հ. Պարոնյանի, Շիրվանզադեի և ուր. պիեսներ: 1917–19-ին (1924–26-ին՝ երաժշտադրամատիկ. թատրոն) գործել է «Հյուսիսային Կովկասի դերասանական խումբը» (ղեկ-ներ՝ Հ. Շահենն և Օ. Ահարոնյան): 1931–38-ին Ռոստով-Նախիջևանի թատրոնը կոչվել է Ազով-Սևծովյան երկրամասի հայկ. պետ. թատրոն: Գործել է մինչև 1941-ը:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սկզբնավորվել է 1789-ին՝ Հովսեփ *Արղությանի* ջանքերով, որը գնել է Գրիգոր *Խալդարյանի* Ս. Պետերբուրգի տպարանը և տեղափոխել Նոր Նախիջևանի Սբ Խաչ վանք: Հվ. Ռուսաստանի առաջին տպարանն էր: Գործել է մինչև 1795-ը (հրտ.՝ 15 անուն գիրք): 1796-ին տպարանը տեղափոխել են Աստրախան: XIX դ-ի վերջին և XX դ-ի սկզբին Նոր Նախիջևանում հայտնի էին Սերովբե Հարությունյանի, Աբրահամ Զամինյանի և Վ. Քիրլյանի (1894–97), Հ. և Ս. Ավագյան եղբայրների (1897–1901), Սերովբե Ավագյանի տպարանները:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՎԱՆՔ, *Սուրխաթի Սուրբ Խաչ* վանք, ճարտ. համալիր ՌԴ Դոնի Ռոստովից հս՝ ձորաբլրի վրա: 1778-ին հիմնադրել են Ղրիմից գաղթած հայերը: Վանքի աղյուսաշեն եկեղեցին (1783–91, ճարտ.՝ Ի. Ստարով) խաչաձև (հվ. և հս. թևերը՝ քառասյուն սրահներ) գմբեթավոր հորինվածք է: 1972-ին եկեղեցին նորոգվել է և վերածվել Ռուս-հայկ. բարեկամության թանգարանի:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՎԱՆՔԻ ԴՊՐՈՑ, հիմնադրվել է 1784-ին Հովսեփ *Արղությանի* նախաձեռնությամբ: Հայտնի է նաև «Սբ Խաչի ժառանգավորաց գիշերօթիկ վարժարան» անունով: Գործել է տարր. դպրոցի ծրագրով: Ունեցել է տպարան, մտնդ., թանգարան: 1880-ական թթ-ին՝ երկսեռ: Գոյատևել է շուրջ 140 տարի:

«ՆՈՐ ՇԱՀՈՒՄՅԱՆ», հաս-քաղ., գր., մշակութ. երկշաբաթաթերթ (2003–ից, Ստեփանակերտ): ԼՂՀ Շահումյանի շրջվարչակազմի պաշտոնաթերթը: Խմբներ՝ Ալեքսանդր Քանանյան, Ալբերտ Ավետյան, Վահան Դանիելյան, Գայանե Բաղրամյան (2008–ից):

«ՆՈՐ ՇԱՐԺՈՒՄ», գր-գեղ., գիտ. շաբաթաթերթ (1923–24, Կահիրե): Խմբ.՝ Գուրգեն Մխիթարյան:

«ՆՈՐ ՇԱՐԺՈՒՄ», ազգ., քաղ., գր. շաբաթաթերթ (1931–34, Աթենք, *«Ժողովուրդի ձայն»* պարբ-ի շարունակությունը): Հունաստանի կոմկուսի հայկ. բյուրոյի պաշտոնաթերթը: Խմբ-ներ՝ Գրիգոր Նազիկյան, Վ. Սաքալյան, Մ. Դարբինյան:

«ՆՈՐ ՇԻՆԱՐԱՐ», ազգ., հաս., մշակութ. պարբերաթերթ (1967–92, Փարիզ): ՀԲԸՄ Եվրոպայի շրջ. կենտր. հանձնաժողովի պաշտոնաթերթը: Խմբ-ներ՝ Սեդրակ Քոբյան, Երվանդ Փափազյան, Կարիկ Պասմաճյան, Ա. Համբարձումյան: «Շինարարի» (1956–66, Փարիզ, խմբ-ներ՝ Վահե Անդրանիկյան, Հովհաննես Պողոսյան, Գրիգոր Պահրի, Հայկ Թոփաքյան) շարունակությունն է:

ՆՈՐ ՇԻՐԱԿԱՆ, *բոլշևիզմ* Մեծ Հայքում: Ընդգրկել է Պարսկահայք նահգ-ի հվ. հատվածը՝ Այլի կամ Կուռհան, Մարի, Թրաբի ու Արիսի կամ Ովեա գվո-ներով, ինչպես նաև Սահկերտ-տուն, Նիխորական (Նիհորական) ու Դասն (Դասնտրե) գվո-ները:

ՆՈՐ ՇՈՏԼԱՆԴԻԱ (Nova Scotia), թ-կոզի Կանադայի հվ-արլ-ում, Նոր Շոտլանդիա պրովինցիայի մաս: Երկ.՝ 430 *կմ*, լայն.՝ 130 *կմ*, բարձր.՝ մինչև 282 *մ*: Կան բազալտի, քարածխի, կերակրի աղի հանքավայրեր:

«ՆՈՐ ՊԱՏԳԱՄ», գր-գեղ. ամսագիր (1924–25, Թեհրան): Խմբ.՝ Մարգար Ղաբրաեգյան (Դև):

ՆՈՐ ՋՈՒՂԱ, հայկ. գաղթավայր Իրանում՝ Սպահան բ-ի մոտ: Հիմնադրել են XVII դ-ի սկզբին՝ *Աբբաս I* շահի տեղահանած ու Սպահանի նահգ-ում բնակեցված Ջուղայի հայերը: Ն. Ջ-ին շնորհվել են արտոնություններ, տրվել ինքնավարություն: Արդեն 1620-ական թթ-ին ունեցել է 30 հզ-ից ավելի բն., դարձել երկրի առևտր. կապիտալի կենտրոն: 1617-ին շահը չեղյալ է համարել Անգլիայի հետ

առևտր. պայմանագիրը, Ն. Ջ–ի վաճառականներին հանձնել իրան. հում մետաքսի արտահանման մենաշնորհը: XVII դ–ի կեսին գաղութի վաճառականներն ստեղծել են «Նոր Ջուղայի հայ առևտրական ընկերությունը»: Հայ վաճառականները կատարել են նաև դիվանագիտ. հանձնարարություններ:

1722–ի աֆղանների արշավանքի ժամանակ Ն. Ջ. ավերվել է, հայերի մեծ մասն արտագաղթել է:

XVII–XVIII դդ–ում Ն. Ջ. եղել է հայկ. մշակույթի կարևոր կենտրոն: 1630–ական թթ–ին ***Խաչատուր Կեսարացին*** այնտեղ հիմնադրել է դպրոց (ժամանակակիցներն անվանել են «համալսարան»), 1638–ին՝ տպարան (տես ***Նոր Ջուղայի հայկական տպագրություն***): Սբ Ամենափրկիչ վանքին կից բացվել է մտնդ. (տես ***Նոր Ջուղայի մատենադարան***): Զարգացել են որմնանկարչությունը, գեղանկարչությունը, մանրանկարչությունը (տես ***Նոր Ջուղայի դպրոց***), ճարտ–յունը: 1858–ին հիմնադրվել է Օրիորդաց դպրոցը, 1880–ին մի քանի դպրոցներ միավորվել և կազմվել են Ազգ. կենտր. դպրոց: Հրատարակվել են «***Նոր Ջուղայի լրաբեր***» ամսաթերթը, այլ պարբ–ներ:

1946–ից սկսվել է հայերի ներգաղթը Հայաստան: 1958–ին Ն. Ջ–ում բնակվել է 5 հզ., 1969–ին՝ 8 հզ., 1979–ին՝ 10 հզ. հայ: Ներկայում Ն. Ջ. Սպահանի թաղամասերից է՝ շուրջ 7 հզ. հայ բնակչությամբ:

«ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆ», ձեռագիր մատյան, գրվել է Նոր Ջուղայում 1610–ին, գրիչ և մանրանկարիչ՝ Հակոբ Ջուղայեցի, պատվիրատու՝ խոջա Ավետիք (Մտնդ., ձեռ. № 7639): Պարունակում է տերուն. և վախճանաբան. թեմաներով 59 մանրանկար, 10 խորան, ավետարանիչների 4 դիմանկար, զարդանկարված 4 անվանաթերթ, Քրիստոսի տոհմագրություն 3 թերթ, 1 ներտեքստ. մանրանկար ու լուսանցազարդեր:

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԴՊՐՈՑ, հայկ. կերպարվ–ի դպրոց Նոր Ջուղայում: Սկզբնավորվել է XVII դ–ում: Գեղանկարչության մեջ առաջնային են դարձել որմնանկարչությունն ու հաստոց. նկարչությունը (Մինաս, Հովհաննես Սիքուզ, Բոգդան Սալթանով և ուր.): Ն. Ջ. դ–ի նկարիչները ձգտել են արտաքին շքեղության ազգ. տիպականացման, միջավայրի և շրջապատող իրականության ճշմարտացի պատկերման: Ն. Ջ. դ. հայկ. միջնադար. արվ–ից նոր ժամանակների արվ–ին անցնելու առաջին քայլն էր:

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սկզբնավորվել է 1638–ին՝ ***Խաչատուր Կեսարացու*** ջանքերով, որը Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքում հիմնադրել է տպարան՝ առաջինն Իրանում և առհասարակ ողջ Միջին Արևելքում: Մինչև 1693–ը տպագրվել են շուրջ 10 անուն կրոն. գրքեր: Շուրջ երկդարյա դադարից հետո 1872–ին տպարանը վերազործարկվել և գործում է ցայսօր (հրտ.՝ ավելի քան 400 անուն գիրք:

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, գործում է տեղի Սբ Ամենափրկիչ վանքի տնօրինության ներքո: Հավաքածուն կազմվել է դեռևս XVII դ–ի 1–ին կեսին: Սկզբնապես եղել է մտնդ–թանգարան: 1971–ին փոխադրվել է նորակառույց շենք և դարձել առանձին միավոր: Ընդգրկում է հիմնականում կրոն., պատմ., բժշկագիտ. ավելի քան 700 ձեռագիր, որոնցից շուրջ 40–ը՝ մագաղաթե:

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՍՈՒՐԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔ, ճարտ. համալիր Իրանի Սպահան ք–ի Մեծ մեյդան թաղում: Հայ եկեղեցու Սպահանի թեմի առաջնորդանիստը: Հիմնադրվել է 1606–ին: Վանքի Սբ Հովսեփ եկեղեցին 2 հզոր մույթերով գմբեթավոր դահլիճ է, ներսից՝ հնգանիստ խորանով, կրկնակի գմբեթով՝ ներքին կիսագնդաձև, արտաքին ձվաձև հորինվածքով: 1702–ին կառուցվել է երկհարկ զանգակատունը (1860–65–ին՝ նորը), 1906–ին՝ մտնդ–ի նոր, 1971–ին՝ թանգարանի շենքերը, 1931–ին՝ ժամացույցով եռահարկ աշտարակը:

«ՆՈՐ ՄԵՔԱՄՏԻԱ», ազգ., պատմ., գր. տեղեկատու պարբերաթերթ (1936–ից, Նյու Յորք՝ հայ. և անգլ.): Համասերաստահայ վերաշինաց միության պաշտոնաթերթը:

«ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴ», մարզ. ամսագիր [1926–29, Պիրեյ (Հունաստան), ապա՝ Աթենք]:

«ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴ», հոգևոր, ազգ., մշակութ. ամսաթերթ (1955–ից, Տորոնտո՝ հայ., անգլ., ֆրանս.): Տորոնտոյի Սբ Երրորդություն եկեղեցու վարչության հրտ–յուն:

«ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴ» մշակութային միություն, հիմնադրվել է 1955–ին Բեյրութում: Գործում է ՄԴՀԿ–ի հովանու ներքո: Միության նախաձեռնությամբ հրատարակվել է «Արարատ գրական» ամսագիրը, 1960–ական թթ–ից գործել են «Արտավազդ» թատերախումբը (1985–ից՝ Շիրվանզադեի անվ.), «Գարուն» երգչախումբը (ղեկ.՝ Կ. Մանկրյան), երգի–պարի խումբ (1982–ից, պարուսույց՝ Ն. Մեհրաբյան), 1997–ից՝ «Արեգ» մանկապատանեկան պարախումբը (գեղ. ղեկ.՝ Ծ. Խաչատրյան): Միության մասնաճյուղեր են գործում Դամասկոսում, Հալեպում, Լոնդոնում, Սիդնեյում, Լոս Անջելեսում և այլուր:

«ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴ», ազգ., գր. ամսաթերթ (1975–85, Լոս Անջելես): Խմբ.՝ Սոնիր Նայիրի:

ՆՈՐ ՎԱՐԱԳԱՎԱՆՔ, Անապատ, ճարտ. համալիր ՀՀ Տավուշի մարզի Վարագավան գ–ից 3,5 *կմ* հվ–արմ.՝ լեռան լանջին: Հիմնադրել է Նոր Բերդի իշխան Դավիթը 1193–98–ին: Եկեղեցին երկխորան, թաղածածկ դահլիճ է, կից են տապանատունը, միանավ փոքր մատուռը, գավիթը: Կանգուն է Սբ Աստվածածին եկեղեցին՝ գլանաձև բարձր գմբեթով (1224–37), որին կից է ուղղանկյուն գավիթը (1237–61): Ունեցել է ջրմուղ (1253):

ՆՈՐ ՏԱՐԻ, տարվա 1–ին օրը: Ժողգ–ների մեծ մասի հիմն. տոներից է: Եվրոպ. բոլոր և շատ այլ երկրներում Ն. տ–վա սկիզբը հունվ. 1–ն է (սահմանել է Հռոմի կայսր Հուլիոս ***Կեսարը*** մ. թ. ա. 46–ին մշակած օրացույցով): Լուսն. կամ լուսնաարեգակն. օրացույցով առաջնորդվող երկրներում տարեսկզբի օրերը տարբեր են (տես ***Հայոց տոմար***, ***Օրացույց***): Հայերը Ն. տ. անցյալում անվանել են Ամանոր և նշել ***Նավասարդի*** 1–ին (համընկել է այժմյան օրացույցի օգոստ. 11–ին):

«ՆՈՐ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ», ազգ., հաս., մշակութ. տեղեկատու հանդես (1918–40, Բրուքլին, ապա՝ Նյու Յորք): Տիգրանակերտի հայրենակց. և վերաշինաց միության կենտր. վարչության հրտ–յուն:

ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ռուս.՝ Новая экономическая политика, НЭП – նէպ), հոչակվել է 1921–ի գարնանը Ռուսաստանում ժողտնտ–յան կազմաքանդման խորացման, գործազրկության, սովի և ներքաղ. դրության կտրուկ սրման պայմաններում: Նպատակը գյուղում պարենմասնատրման փոխարինումն էր պարենահարկով, շուկայի, սեփականության տարբեր ձևերի օգտագործումը, օտարերկրյա կապիտալի ներգրավումը, դրամի ռեֆորմը (1922–24): Արդ–յան մեջ լուծարվել են սինդիկատները, դուրս է մղվել մասնավոր կապիտալը, ներդրվել տնտ. կենտրոնացված կոշտ կառավարման համակարգ (պետ. ժողկոմներ): Իրականացվել է հացամթերքի հարկադիր բռնագրավման և գյուղի բռնի կոլեկտիվացման քաղ–յուն, վարչ. կադրերի նկատմամբ ճնշամիջոցներ:

Խորհրդ. Հայաստանում Ն. տ. ք. օրենսդրորեն հաստատվել է 1921–ից՝ Ա. Մյասնիկյանի ստորագրությամբ հրապարակված «Պարենատուրքի մասին» ՀԽՍՀ դեկրետով, և գործել մինչև 1920–ական թթ–ի վերջը:

«ՆՈՐ ՈՒՂԻ», գր. ալմանախ (1913–16, Ալեքսանդրապոլ): Խմբ.՝ Աշոտ Սիմոնյան:

«ՆՈՐ ՈՒՂԻ», գր–գեղ., հաս–քաղ. ամսագիր (1929–32, Երևան): Խմբ–ներ՝ Պողոս Մակինցյան, Արտաշես Կարինյան, Եղիա Չուբար, Դրաստամատ Տեր–Սիմոնյան:

«ՆՈՐ ՈՒՂԻ», քաղ., հաս., գր. շաբաթաթերթ (1935–39, Լոս Անջելես՝ հայ., անգլ.): Խմբ.՝ Սարտիկ Սարտենց:

«ՆՈՐ ՈՒՂԻ», գր., հաս. եռօրյա թերթ (1944–45, Բուխարեստ): Ռումինահայ հայրենասերների, ապա՝ «Հայաստանյան ճակատ» կազմ–յան պաշտոնաթերթ:

«ՆՈՐ ՈՒՂԻ», գր., հաս., մշակութ. պարբերագիրք (1945–47, Բեյրութ): Խմբ–ներ՝ Գրիգոր Քեշիշյան, Գրիգոր Սիսվան (Քեքմեզյան), Հարություն Գայայան, Հրաչ Բուջիկանյան, Վարսիկ Պոյաճյան (Շաքե Վարսյան), Փանոս Չագրյան:

«ՆՈՐ ՈՒՍԱՆՈՂ», հաս–քաղ., գր–գեղ. հանդես (1924, Երևան): ԵՊՀ ուսանող. խորհրդի պաշտոնաթերթ:

ՆՈՐ ՔԱՐԻ ԴԱՐ, նեոլիթ, ***քարի դարի*** վերջին դարաշրջանը: Մի շարք տարածքների համար Ն. ք. դ–ի սկիզբը կապում են արտադրող. տնտ–յան («***նորքարի–դարյան հեղափոխություն***») անցման, այլ տարածքներում՝ ***խեցեգործության*** ի հայտ գալու հետ: Ն. ք. դ–ում տարածվել են հղկված ու սղոցված քարեր, հղկված գայլիկոնված կոթատեղի փորվածքով կացիններ, դուր և այլ գործիքներ: Սկսել է զարգանալ մանածագործությունը: Ն. ք. դ–ի արվ–ին հատկանշական են խեցեգործ. կերպարվ–ի ծաղկումը, նախշած խեցեղենը, քարափորագրությունը ևն: Մի շարք շրջաններում առաջացել են առաջին քաղաքները: Ն. ք. դ. փոխարինվել է վաղ մետաղամշակության ժամանակաշրջանով (պղնձի–քարի դար, բրոնզի դար), իսկ մի շարք տարածքներում՝ անմիջապես բրոնզի կամ երկաթի դարով:

Հայաստանի տարածքում Ն. ք. դ. թվագրվում է մ. թ. ա. X հզ–ամյակ–VI հզ–ամյակի կեսերով:

ՆՈՐ ՕՌԼԵԱՆ (New Orleans), ք. ԱՄՆ–ում՝ Լուիզիանա նահց–ում: Բն.՝ 206,7 հզ. (արվարձաններով՝ 1,3 մլն, 2010): Ծով. նվ–նգստ է Միսսիսիպիի ափին: Ունի օդանավակայան: Տրանսպորտ. հանգույց է: Հվ. ԱՄՆ–ի կարևորագույն ֆին. ու առևտր. կենտրոն: Կան նավթավերամշակման, մեքենաշին., գունավոր

մետաղաձուլ., քիմ., սննդի արդ-յան ձեռնարկներ, համալսարաններ, թանգարաններ: Հիմնադրել են ֆրանսիացիները 1718–ին, 1761–1800–ին՝ իսպ. տիրույթ: 1800–ին ֆրանսիացիները հետ են գրավել և 1803–ին վաճառել ԱՄՆ–ին: Խիստ տուժել է 2005–ին՝ փոթորիկից:

«ՆՈՐ ՕՍՄԱՆՆԵՐ» (Yeni Osmanlilar), 1860–70–ական թթ–ի բարենորոգչ. շարժման մասնակիցներ Թուրքիայում, կողմ էին սահմանադր. միապետության հաստատմանը: «Ն. օ.» գաղտնի քաղ. կազմյունն ստեղծվել է 1865–ին: 1876–ին կատարել են պալատ. հեղաշրջում, ընդունել սահմանադրություն: Սակայն գահակալած *Աբդուլ Համիդ II*–ը 1878–ին վերացրել է սահմանադր. վարչակարգը և ստեղծել միահեծան բռնակալ. իշխանություն: «Ն. օ.» ենթարկվել են բռնաճնշումների:

«ՆՈՐ ՕՐ», ազգ., բանասիր., քաղ. եռօրյա թերթ (1899–1901, Կահիրե): Կահիրեի հայկ. գաղութի լսարան–ընթերցարանի պաշտոնաթերթ: Խմբ.՝ Սմբատ Բյուրատ:

«ՆՈՐ ՕՐ», ազգ., քաղ., գր. պարբերաթերթ (1921–ից, Ֆրեզնո, ապա՝ Լոս Անջելես, 1921–22–ին՝ «Նոր կեանք–Արօր»): ՌԱԿ–ի ԱՄՆ–ի արմ. շրջանի պաշտոնաթերթ: Խմբ–ներ՝ Գ. Սարաֆյան, Արամ Ամիրխանյան, Վահե Հայկ, Նորայր Անդրեասյան, Անդրանիկ Անդրեասյան, Նուբար Պերպերյան, Օշին Քեշիշյան, Ասատուր Տեովլեթյան, Նուբար Ալիշյան, Սարգիս Մինասյան, Հակոբ Մարտիրոսյան:

ՆՈՐԱԴՐԵՆԱԼԻՆ, կատեխոլամինների խմբի միացություն, նյարդահորմոն: Առաջանում է մակերիկամի կեղև. շերտում և նյարդ. համակարգում, որտեղ ծառայում է որպես միջնորդանյութ՝ սինապսների միջոցով նյարդ. ազդակների հաղորդման համար: Բարձրացնում է արյան ճնշումը, խթանում ածխաջր. փոխանակությունը ևն: Ստացվել է սինթետիկ ճանապարհով: Օգտագործվում է բժշկության մեջ, օր.՝ թունավորումների դեպքում:

ՆՈՐԱԼՈՒՍԻՆ, 1. Լուսնի փուլ, երբ Լուսինը դեպի Երկիր ուղղված է չլուսավորված կողմով և Երկրից չի երևում: 2. Այդ փուլի երկր. ժամանակը: 3. Ն–ից լիալուսնին անցնելու սկզբնական ժամանակաշրջանը, երբ Լուսինն ունի նեղ մանգաղի տեսք:

ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ, պտղի օրգանների և հյուսվածքների վնասումները ծննդաբերության ընթացքում: Պայմանավորված է ծննդաբեր. արտամղող ուժերի (կծկումներ, ճիգեր) և պտղի հյուսվածքների առաձգականության միջև անհամապատասխանությամբ: Նախատրամադրող պատճառներն են հղիության թունավորումները, մոր կրած հիվանդությունները, նյութափոխանակության խանգարումները, վաղաժամ և ուշացած ծննդաբերությունները: Հաճախ հանդիպում են ներգանգ. արյունազեղումներ, անրակի և ուսագոտու ոսկրերի կոտրվածքներ, հոդախախտումներ, բազկային հյուսակի լուծնք և դիմային նյարդի կիսալուծնք:

ՆՈՐ–ԱՅՐ (Հարությունյան Նորայր Ալեքսանդրի, 1912–1981), արձակագիր, լրագրող: Հեղինակ է «Նովելներ և վիպակներ» (1949) ժող–ի, «Փրկության փարոսը» (1940) և այլ վիպակների, «Ոլորտներում» (1958), «Լռռվա աստղեր» (1962), «Արամ» (1970), «Պատմություն գրված քարի վրա» (1978) վեպերի:

ՆՈՐԱՇԵՆԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ, ճարտ. համալիր Սյունիքի նհնգ–ի Երնջակ գվո–ի Նորաշեն գ–ում: Պահպանվել են վանքի քառամույթ եռանավ բազիլիկ եկեղեցին (951) և նրան կից գավիթ–սրահը: Նորոգվել է XVI–XVII դդ–ում: Վանքում ընդօրինակել և ծաղկել են մի շարք ձեռագրեր, պահպանվածների (XVII դ.) մի մասը Մտնդ–ում է:

ՆՈՐԱՇԽԱՐՀՅԱՆՆԵՐ, ենիդունյաններ, իշխան. տոհմ Զեյթունում: Կիլիկիա են գաղթել (X–XI դդ.) Անիից, XVI դ–ում հաստատվել են Զեյթունում: Մինչև XVIII դ–ի կեսը կոչվել են Վասիլյաններ: 1702–ին Ն–ին օսմ. կառ–յունն աքսորել է Եգիպտոս: 1744–ին վերադառնալով՝ Ն. հալածել են իրենց հակառակորդ Ափարտյաններին, տիրել քաղաքի նրանց թաղին և այն անվանել «Ենի դունյա» (թուրք.՝ «Նոր աշխարհ»): Ն–ից հայտնի են 1862–ի Զեյթունի հերոսամարտի առաջնորդ Աստվածատուրը, *Պապիկ իշխանը*, 1895–ի ապստամբության ղեկ. Նազարեթը: Մինչև Զեյթունից հայերի բռնի տեղահանումը (1921) Ն. պահպանել են իրենց ղեկ. դերը:

ՆՈՐԱՎԱՆՔ, ճարտ. համալիր ՀՀ Վայոց ձորի մարզի Ամաղու գ–ից 3 *կմ* հս–արլ.՝ խոր կիրճի դարավանդի վրա: Ունի կից 2 եկեղեցի, գավիթ, եկեղեցի–տապանատուն, արլ. կողմում՝ երկհարկ եկեղեցի, պարսպից դուրս՝ 2 մատուռ: Հնագույնը միանավ Սբ Կարապետ եկեղեցին է (IX–X դդ., պեղվել է 1982–83–ին): Համալիրի կենտրոնում գլխ.՝ Սբ Ստեփանոս Նախավկա եկեղեցին է (1216–21, կառուցողներ՝ Լիպարիտ Օրբելյան և արք. Սարգիս), գավիթը (Օրբելյանների տոհմ. տապանատուն) կառուցվել է 1261–ին, գմբեթը վերականգնվել է 1980–ական թթ–ին: Հս–ից կից է Սբ Գրիգոր եկեղեցին (1275, ճարտ.՝ *Սիրանեա*): Սբ Աստվածածին երկհարկ (եռաստիճան) եկեղեցու (1339, կառուցող՝ Բուրթել իշխան) 1–ին հարկը կիսագետնափոր է, 2–րդը՝ դրսից և ներսից խաչաձև կիսաշրջանաձև խորանով և թաղածածկ ավանդատներով: Բակում և գավթում մեծարժեք խաչքարեր են:

«ՆՈՐԱՎԱՆՔ», գիտակրթ. հիմնադրամ, ստեղծվել է 2000–ին Երևանում: Հիմնադիր–տնօրեն՝ Գագիկ Ա. *Հարությունյան*: Իրականացնում է ռազմավար. հետազոտություններ, գիտակրթ. և հրտչ. գործունեություն: Ներառում է հայագիտ., ուս., տեղեկատվ. և քաղ. հետազոտությունների կենտրոնները: Լույս է ընծայում վերլուծ. «21–րդ դար» և «Գլոբուս» (2006–ից) հանդեսները:

ՆՈՐԱՎԱՅԱՆ Ազատ Սողոմոնի (1937–2015), նյարդաքիմիկոս: Քիմ. գիտ. դ–ր (1982), պրոֆ. (1984): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2000): Աշխ–ները վերաբերում են կոնդենսացված երկ–, եռ–, քառ– և հնգանդամ տարրացիկլերի և դրանց ստացման սինթետիկ եղանակների մշակմանն ու ռեակցիաների մեխանիզմներին: Էկոլոգիայի միջազգ. ակադ–ի (1996) և ՌԲՆԳԱ (1998) անդամ:

ՆՈՐԱՏՈՒՆԿՅԱՆ Գաբրիել Գրիգորի (1852–1936), հաս., քաղ. գործիչ, դիվանագետ: 1875–ից աշխատել է Թուրքիայի ԱԳՆ–ում: 1877–78–ի ռուս–թուրք. պատերազմից հետո նշանակվել է սահմանագծման հանձնաժողովի անդամ: 1883–ից՝ Բարձր դռան իրավագետ–խորհրդական: Երիտթուրք. հեղաշրջումից (1908) հետո՝ Թուրքիայի առևտրի, ապա՝ հանրօգուտ աշխ–ների, 1912–13–ին՝ ԱԳ նախարար: 1894–ին ընտրվել է Կ. Պոլսի Ազգ. ժողովի նախագահ: 1922–23–ի Լոզանի խորհրդաժողովում գլխավորել է (*Պողոս Նուբարից* հետո) հայոց Ազգ. պատվիրակությունը: Հրատարակել է «Օսմանյան կայսրության միջազգային վավերագրերի հավաքածու» (ֆրանս., հ. 1–4, 1897–1903) ժող–ը:

ՆՈՐԱՐԱՄԵԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, արամեական լեզուներ, որոնք օգտագործվել կամ օգտագործվում են ժամանակակից դարաշրջանում: Ունեն 2 խումբ՝ արմ. և արլ.: Արմ. խմբում կա նույն լեզվի 3 բարբառ, որոնք հազվադեպ դիտվում են որպես 3 տարբեր լեզուներ: Արլ. խմբի լեզուները XX դ–ի սկզբում տարածվել են նաև Այսրկովկասում, Հվ. Իրաքում: XX դ–ում Ն. լ–ով խոսողների մեծ մասը ընաջնջվել է կամ գաղթել Եվրոպա, ԱՄՆ, ՌԴ (այդ թվում՝ Այսրկովկաս):

ՆՈՐԳՈԹԱԿԱՆ ՈՃ, կեղծ գոթական ոճ, ուղղություն եվրոպ. ճարտ–յան մեջ (XVIII դ.–XX դ–ի սկիզբ). բնորոշ են գոթ. ոճի ճարտ–յան ձևերը, դեկորները, երբեմն՝ կառուցվածք. հիմնակմախքը: Զևավորվել է Մեծ Բրիտանիայում XVIII դ–ի 2–րդ կեսին՝ դառնալով XIX դ–ի կեսերի գլխ. հոսանքն էկլեկտիկ ճարտ–յան մեջ (Չ. Բերրի՝ Մեծ Բրիտանիա, Կ. Ֆ. Շինկել՝ Գերմանիա, Է. Է. Վիոլլե լե Դյուկ՝ Ֆրանսիա, Վ. Ի. Բաժենով, Ֆ. Օ. Շեխտել՝ Ռուսաստան, և ուր.):

«ՆՈՐ–ԴԱՐ», ազգ., քաղ., գր. պարբերաթերթ (1883–1916, Թիֆլիս, 1904–05–ին ընդհատվել է, 1907–16–ին՝ տարեգիրք): Խմբ.՝ Սպանդար Սպանդարյան:

«ՆՈՐ–ԴԱՐ», ՀԳՄ գր–գեղ. պարբ. (1995–ից, Երևան): Խմբ–ներ՝ Աբգար Ափինյան, Արտաշես Ղազարյան, Ալեքսանդր Ղուկասյան (2005–ից):

ՆՈՐԴԵՆՇԵԼԴ (Nordenskiöld) Նիլս Ադոլֆ Էրիկ (1832–1901), շվեդ երկրաբան, Արկտիկայի հետազոտող: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. անդամ (1879): Հետազոտել է Շպիցբերգենը, Գրենլանդիան, 1878–79–ին «Վեգա» շոգենավով 1 ձմեռումով անցել է Հս. ծով. ուղին, շրջանցել է Եվրասիան և Սուեզի ջրանցքով վերադարձել Շվեդիա: Ն–ի անունով կոչվել է կղզեխումբ Կարայի ծովում:

ՆՈՐԴԵՆՇԵԼԴԻ ԿՂԶԵԽՈՒՄԲ, Կարայի ծովի հվ–արլ–ում (ՌԴ տիրույթ): Ներառում է 90 կղզի, որոնք բաժանվում են 5 խմբի (Վիլկիցկու, Ցիվալկոյի, Պախտուսովի, Լիտկեի և Արլ.): Ծածկված են արկտիկ. անապատով և տունդրայով:

ՆՈՐԴԿԱՊ (Nordkapp), հրվանդան Եվրոպայի հս–ում՝ Նորվեգիայի Մագերյո կղզում (հս. լայն–յան 71º10′ և արլ. երկայն–յան 25º47′): Ժայռի բարձր.՝ 300 *մ*:

ՆՈՐԴԿԱՊՅԱՆ ՀՈՍԱՆՔ, տաք հոսանք Սկանդ. և Կոլա թ–կղզիների ափերին, Նորվեգ. հոսանքի ճյուղ: Ն. հ–ի շնորհիվ Բերինգի ծովի հվ–արմ. մասը չի սառցակալում:

ՆՈՐԴԿԻՆ (Nordkyn), հրվանդան Նորվեգիայում, մայրցամաք. Եվրոպայի հս. վերջնամասում (հս. լայն–յան 71º 08′ և արլ. երկ–յան 22º 42′):

ՆՈՐԵՅԿԱ (Noreika) Վիրգիլիուս–Կյաստուտիս (ծ. 1935), լիտվացի երգիչ (քնար. տենոր): Լիտվ. ԽՍՀ (1967), ԽՍՀՄ (1970) ժող. արտիստ: 1957–ից՝ Լիտվայի օպեր. թատրոնի մեներգիչ (Լենսկի՝ Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», Ռուդոլֆ՝ Ջ. Պուչչինիի «Բոհեմ», Վերթեր՝ Ժ. Մասնեի «Վերթեր», ևն), 1975–91–ին՝ գեղ. ղեկ. և դիրիժոր: Լիտվ. ԽՍՀ Պետ. (1960, 1970), Լիտվայի Ազգ. (2010) մրց–ներ:

ՆՈՐԵՆՑ (Երիցյան) Վաղարշակ Տոնապետի (1906–1973), բանաստեղծ: ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1967): Մասնակցել է *«Նոյեմբեր»* գր. միության ստեղծմանը: Կազմել և խմբագրել է արևմտահայ գրողների երկերի ժող–ներ: Հեղինակ է «Օրերի ճամփին» (1925), «Իրիկուն» (1926), «Երկրորդ գիրք» (1930), «Լիրիկական ֆրոնտ» (1932), «Բանաստեղծություններ» (1936), «Գիրք քնարական» (1954), «Իմ աշխարհը» (1958), «Դարերի ավանդ» (1968) ժող–ների, «Հուշեր և արձագանքներ» (1968) հուշագրության: 1937–ին բռնադատվել է, հետագայում՝ արդարացվել:

ՆՈՐԹ (North) Դուգլաս Սեսիլ (1920–2015), ամերիկացի տնտեսագետ: Շուկայական տնտ–յունը սերտորեն կապել է սոցիալ. ու քաղ. ինստ–ների հետ և նրանց փոփոխությունների ուսումնասիրությունը համարել տնտ. տեսության մաս: 1960–ական թթ–ի սկզբին անդրադարձել է տնտ. պատմության ուսումնասիրության նոր ուղղության (կլիոմետրիկա), որը հիմնվում է օբյեկտիվ տվյալների վիճակագր. վերլուծության վրա:

Նորելյան մրց. (1993, Ռ. *Ֆոգելի* հետ):

ՆՈՐԹՀԵՄՊՏՈՆ (Northampton), ք. Մեծ Բրիտանիայում՝ Անգլիայում: Բն.՝ 185 հզ. (2010):

ՆՈՐԹՐՈՊ (Northrop) Ջոն Հաուարդ (1891–1987), ամերիկացի կենսաքիմիկոս: Ապացուցել է ֆերմենտների սպիտակուց. բնույթը (1937, Ջ. *Սամներից* անկախ): Առաջինն է անջատել (բյուրեղ. վիճակում) պեպսին, թրիպսին ֆերմենտները, նաև դիֆթերիային անատոքսինը:

Նոբելյան մրց. (1946, Ու. Մ. *Սթենլիի* հետ):

ՆՈՐԻԼՍԿ, ք. (1953–ից) ՌԴ Կրասնոյարսկի երկրամասում: Բն.՝ 203,9 հզ. (2007): Երկթղ–ով կապված է Դուդինկա նավահգստ–ի հետ: Աշխարհի ամենահս. քաղաքներից է: Հիմնադրվել է 1920–ին՝ որպես երկրաբանների կեցավայր: 1935–ին ծավալվել է լեռնամետաղագործ. կոմբինատի շին–յունը (կառուցել են քաղ. բանտարկյալները, այժմ՝ «Նորիլսկնիկել» ընկ–յան մասնաճյուղ): Արդյունահանում և վերամշակում է նիկելի, կորալտի, պղնձի հանքանյութեր, քարածուխ: Ն–ի և Դուդինկայի հատակագծերը 1954–ին կազմվել և իրականացվել են Միքայել Մազմանյանի և Գևորգ Քոչարի ղեկավարությամբ:

ՆՈՐԻՇ (Norrish) Ռոնալդ Ջորջ Ռեյֆորդ (1897–1978), անգլիացի ֆիզքիմիկոս: Աշխ–ները վերաբերում են արագընթաց քիմ. երևույթներին (լուսաքիմ., այրման, ճայթյուն.): Մշակել է (Ջ. *Պորտերի* հետ) իմպուլս. լուսաքիմ. տարրալուծման եղանակները:

Նոբելյան մրց. (1967, Մ. *Էյգենի* և Ջ. Պորտերի հետ):

ՆՈՐԻՉ (Norwich), ք. Անգլիայում: Բն.՝ 171,2 հզ. (2010): Ունի համալսարան, թանգարաններ: Հայտնի են Նորմանդ. դղյակը (XII դ.), ռոմանոգոթ. տաճարը (XI–XV դդ.), գոթ. կառույցները, այդ թվում՝ Հին ռատուշան (XV դ.):

ՆՈՐԻՍ (Norris) Չակ (Ռեյ Կառլոս, ծ. 1940), ամերիկացի դերասան: 1968–ից նկարահանվել է կինոյում, հիմնականում՝ հալածվածների պաշտպանի դերերում («Վիշապի վերադարձը», «Ակն ընդ ական», «Կռվի դաշտում անհետ կորածները», «Լռության կոդեքս», «Ոսկերիչ» ևն): Եղել է կարատեի չեմպիոն:

ՆՈՐԿԱՆՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, XIX դ–ի 2–րդ կես–XX դ–ի սկզբի փիլ. ուղղություն: Փորձել է վերածնել Ի. *Կանտի* փիլ–յունը: Ն. միավորել է մի շարք ուղղություններ՝ ֆիզիոլոգ. (Հ. Հելմհոլց, Ֆ. Լանգե), հոգեբ. (Լ. Նելսոն), քննադատ. ռեալիզմ (Ա. Ռիլ), մարբուրգյան դպրոց, բադենյան դպրոց, ֆիկցիոնալիզմ (Հ. Ֆայհինգեր), ֆրանս. նորկրիտիցիզմ (Շ. Ռենուվիե): Ն–յան բարոյականության հիմքում կեցության և պարտավորվածության հակադրումն է, սոցիալիզմը մեկնաբանվել է որպես անհասանելի իդեալ և դրվել բարոյագիտ. սոցիալիզմի հիմքում:

ՆՈՐԿՈՆՖՈՒՑԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, չին. փիլ–յան դպրոց: Զևավորվել է *Սունի* օրոք (X–XIII դդ.)՝ վաղկոնֆուցիականության բարոյաքաղ. հայեցակարգերի հիման վրա: Ն–ում առանցքային են գոյաբանության, բնափիլ–յան և տիեզերաբանության հարցերը: Ականավոր ներկայացուցիչներից էին Չժու Սին, Վան Յանմինը, Դայ Չժենը և ուր.: Մինչ XX դ–ի սկիզբը Ն. գերակա ազդեցություն է ունեցել Չինաստանի հաս–քաղ. և փիլ. մտքի վրա: Ազդեցիկ է եղել Ճապոնիայում, Կորեայում և Վիետնամում:

ՆՈՐՀԵԳԵԼԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, XIX դ–ի վերջ–XX դ–ի սկզբի իդեալիստ. փիլ–յան հոսանք, որը Գ. *Հեգելի* ուսմունքի նորացված մեկնաբանության հիման վրա ձգտել է ստեղծել ամբողջ. աշխարհայացք: Հիմն. խնդիրները վերաբերում են պատմությանը, մշակույթին, իրավունքի փիլ–յանը և դիալեկտիկ. մեթոդն իռացիոնալիզմի ոգով մեկնաբանել է որպես հակադրությունների «հաշտեցում»: Ներկայացուցիչներից են Ջ. Ստիոլինգը, Է. Կերդը, Ֆ. Բրեդլին, Բ. Բոզանկետը, Ռ. Քոլինգվուդը (Մեծ Բրիտանիա), Հ. Բոլանդը (Նիդեռլանդներ), Ջ. Ջենտիլեն (Իտալիա), Վ. Դիլթեյը (Գերմանիա), Ի. Իլյինը (Ռուսաստան), Ա. Կոժեն (Ֆրանսիա): Նորհեգելականներն ստեղծել են «Հեգելական միություն» (1930), հրավիրել խորհրդաժողովներ:

ՆՈՐՄԱ մաթեմատիկայում, թվի բացարձակ մեծության ընդհանրացված հասկացությունը: Օր.՝ $\vec{x}$ վեկտորի Ն.՝ $\|\vec{x}\|$ անվանում են նրա երկ–յունը:

ՆՈՐՄԱԼ (լատ.՝ normalis – ուղիղ) **կորի (մակերևույթի)**՝ նրա որևէ M կետում, այդ կետով անցնող ուղիղը, որը ուղղահայաց է M կետում կորին (մակերևույթին) տարված շոշափող ուղղին (շոշափող հարթությանը):

ՆՈՐՄԱԼ ԱՐԱԳԱՑՈՒՄ, **կենտրոնաձիգ արագացում**, կորագիծ շարժման դեպքում նյութ. կետի արագացման բաղադրիչը, որն ուղղված է կետի հետագծի նորմալի ուղղությամբ՝ դեպի կորության կենտրոնը: Ն. ա. անվանում են նաև կենտրոնաձիգ արագացում: Թվապես հավասար է v^2/ρ–ի, որտեղ v–ն կետի արագությունն է, ρ–ն՝ հետագծի կորության շառավիղը: Ուղղագիծ շարժման դեպքում Ն. ա. հավասար է 0–ի:

ՆՈՐՄԱԼ ԲԱՇԽՈՒՄ, **Գաուսի բաշխում**, x պատահական մեծության հավանականությունների այնպիսի բաշխում, երբ նրա բաշխման խտությունն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$\rho(x) = \frac{1}{\sigma\sqrt{2\pi}}\, e^{-(x-a)^2/2\sigma^2},$$

որտեղ a–ն պատահական մեծության մաթ. սպասումն է, իսկ σ^2–ն՝ x պատահական մեծության դիսպերսիան: Ն. բ–ման կարևորությունը կապված է այն փաստի հետ, որ բավականաչափ լայն պայմաններում նրանք մոտարկում են մեծ թվով անկախ պատահական մեծությունների գումարների բաշխումը:

ՆՈՐՄԱԼ ԷԼԵԿՏՐԱՏԱՐԸ, *գալվանական տարր*, որի էլշուն կայուն է հաստատուն ջերմաստիճանի և ճնշման դեպքում: Ն. է–ի դրական էլեկտրոդը Hg է, բացասականը՝ կադմիումի կամ ցինկի ամալգամը, էլեկտրոլիտը՝ կադմիումի կամ ցինկի սուլֆատի ջր. լուծույթը: Տարբերում են հագեցած (էլշուն՝ 1,0185–1,0187 Վ) և չհագեցած (էլշուն՝ 1,0186–1,0194 Վ) Ն. է–եր: Օգտագործվում են որպես էլշուի օրինակելի չափ և որպես հենքային էլշուի աղբյուր՝ չափիչ սարքերում:

ՆՈՐՄԱԼ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ տարածական կորի M կետում, հարթություն, որն անցնում է M–ով և ուղղահայաց է այդ կետում կորին տարված շոշափող ուղղին: Տրված կետում կորին տարված բոլոր նորմալներն ընկած են Ն. հ–յան մեջ:

ՆՈՐՄԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ֆիզ. պայմաններ, որոնք բնութագրվում են P = 101325 *Պա* (նորմալ մթն.) ճնշումով և 273,15 K (0°C) ջերմաստիճանով, որոնց դեպքում իդեալ. գազի 1 մոլ–ի ծավալը՝ $V_0 = 2{,}24136 \cdot 10^{-2}$ *մ*^{3}:

ՆՈՐՄԱԼՈՒԹՅՈՒՆ լուծույթի, լուծույթի կոնցենտրացիան՝ չափման արտահամակարգ. միավոր. հավասար է 1 *լ* լուծույթում պարունակվող լուծված նյութի *գ*–համարժեքների թվին:

ՆՈՐՄԱՆ (Norman) Ջեսսի (ծ. 1945), աֆրոամերիկացի երգչուհի (սոպրանո): Ճանաչվել է Ֆ. Շուբերտի, Յ. Բրամսի, Գ. Մահլերի, *Նոր վիեննական դպրոցի* կոմպոզիտորների վոկալ երկերի կատարումներով: 1969–ից հանդես է գալիս աշխարհի նշանավոր օպեր. թատրոններում:

ՆՈՐՄԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ուղղություն պատմագրության մեջ, որի կողմնակիցները (Հ. Ֆ. Միլլեր, Գ. Ջ. *Բայերի* և ուր. աշխ–ների հիման վրա) ապացուցում են նորմանների (վարյագներ) և իշխան Ռյուրիկի սկանդ. ծագումը: Ն. տ–յան հակառակորդները (Մ. Վ. Լոմոնոսով, Ս. Ա. Գեդեոնով, Դ. Ի. Իլովայսկի և ուր.) պնդում են նրանց սլավոն. կամ հուն. ծագումը:

ՆՈՐՄԱՆԴԱԿԱՆ ԴԵՍԱՆՏԱՅԻՆ ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1944, ԵՀՊ–ի ժամանակ Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ–ի զորքերի՝ Բրիտ. կղզիներից Լա Մանշով ափհանումը *Նորմանդիա* և ռազմավար. հենակետի գրավումը, որով սկսվել է հարձակող. ռազմագործողությունը Հս–արմ. Ֆրանսիայում: Ն. դ. ռ–յամբ Գերմանիայի և նրա դաշնակիցների դեմ բացվել է *երկրորդ ճակատը*:

ՆՈՐՄԱՆԴԱԿԱՆ ԿՂԶԻՆԵՐ (Cannel Island), Լա Մանշ նեղուցում՝ Մեծ Բրիտանիայի կազմում: Տարածքը՝ 196 *կմ*^{2}, բարձր.՝ 148 մ: Հիմն. կղզիներն են Հերսին և Ջերսին, կան մարգագետիններ: Զարգացած են բանջարաբուծությունը և ծաղկաբուծությունը (հիմնականում՝ ջերմոց.), ձկնորսությունը: Կլիմ. առողջավայր է: Նվինգստ–ը՝ Մենտ Հելիերը, խոշոր բանակային կենտրոն է (Ջերսի կղզում):

ՆՈՐՄԱՆԴԻԱ (Normandie), պատմ. մարզ Ֆրանսիայի հս–արմ–ում, հիմնականում՝ Նորմանդիա թ–կղզում: Ներառում է Կլավադոս, Մանշ, Էր, Մերձծով. Սեն,

մասամբ՝ նաև Օռն դեպարտամենտները: Բաժանվում է 2 տնտ. շրջանների՝ Վերին և Ստորին Ն.: Գլխ. ք-ները՝ Ռուսան, Կան: X դ–ի 1-ին կեսին այդ տարածքը նվաճել են նորմանները (այստեղից՝ անվանումը): X դ–ի սկիզբ–XIII դ–ում՝ Ն–ի դքսությունն, Անգլիայի նվաճումներից (1066) հետո՝ Անգլիայի թագավորների տիրույթ: 1202–04–ին Ֆրանսիան վերանվաճել է Ն., որը մինչև 1790-ն ունեցել է պրովինցիայի կարգավիճակ:

«ՆՈՐՄԱՆԴԻԱ–ՆԵՄԱՆ», «Մարտնչող Ֆրանսիա» կործանիչ ավիացիոն գնդի անվանումը: Գործել է խորհրդա-գերմ. ռազմաճակատում 1943–45–ին: Գնդի օդաչուները կատարել են 5 հզ. մարտ. թռիչք, մղել 869 օդ. մարտ, ոչնչացրել 273, վնասել գերմ. 50 ինքնաթիռ: 1944–ին՝ Լիտվայի ազատագրման մարտերում աչքի ընկնելու և Նեմանի գետանցմանը մասնակցելու համար գնդին շնորհվել է «Նեմանյան» պատվ. անվանումը:

ՆՈՐՇՏԵՅՆ Յուրի Բորիսովիչ (ծ. 1941), ռուս. կինոռեժ., նկարիչ: ՌԴ ժող. արտիստ (1996): 1961–ից՝ Սոյուզմուլտֆիլմ կինոստուդիայի ռեժ.: Նկարահանել է «Աղվեսը և նապաստակը» (1973), «Ձկնկուլը և կռունկը» (1974), «Ոզնին մշուշում» (1975), «Հեքիաթների հեքիաթը» (1979, Լ. Ս. Պետրուշևսկու մասնակցությամբ), «Շինել» (1981, անավարտ) և այլ մուլտֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1979):

ՆՈՐՊԼԱՏՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, անտիկ փիլ–յան վերջին խոշոր ուղղությունը III–VI դդ–ում: Համակարգել է *Պլատոնի* ուսմունքը՝ միավորելով Արիստոտելի, նորպյութագորասականության և այլ ուսմունքների մի շարք գաղափարներ: Հիմնադրել է *Պլոտինը*, զարգացրել են Պորփյուրը, Յամբլիքոսը, Պրոկլեսը, Բոեցիուսը: Հիմն. դպրոցներն են հռոմեական, աթենական, սիրիական, պերգամական և ալեքսանդրյան դպրոցները: Ն. մշակել է Պլատոնի եռյակի՝ «Միասնականի», «մտքի» և «հոգու» մասին ուսմունքը: Ն. մեծ ազդեցություն է թողել միջնադար. փիլ–յան և աստվածաբանության վրա:

ՆՈՐՊՅՈՒԹԱԳՈՐԱՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, հինհուն. փիլ–յան միստիկ. ուղղություն (մ. թ. ա. I դ.–մ. թ. III դ.): Ներկայացուցիչները՝ Նիգիդիուս Ֆիգուլուսը, Ապոլոն Թիանացին և ուր.: Ն. զարգացել է միջին պլատոնականության հետ սերտ կապի մեջ (թվի մերձեցումը Պլատոնի գաղափարներին): Համարվել է *նորպլատոնականության* և *գնոստիցիզմի* սկզբնաղբյուրներից:

«ՆՈՐ–ՋՈՒՂԱՅԻ ԼՐԱԲԵՐ», ազգ., կրթ., գր. ամսաթերթ (1904–08, Նոր Ջուղա): Նոր Ջուղայի ազգ. հոգաբարձության պաշտոնաթերթ: Խմբ.՝ Բագրատ Վարդազարյան:

ՆՈՐՈՒՍԱԿԱՆ ՈՃ, ռուս. մոդեռնիզմի ազգ. ոճմանտիկ. ճյուղ: Ձևավորել է Ս. Ի. *Մամոնտովի* գեղ. խմբակն Աբրամցևոյում (1870–80–ական թթ–ի սահմանագիծ): Նպատակն արվ–ների համադրումն էր (ոճի նմանակում, ժող. արհեստների վերականգնում): Արտացոլվել է ճարտ–յան (Ֆ. Օ. Շեխտել, Ա. Վ. Շուսև), բեմանկարչության (Կ. Ա. Կորովին, Ա. Յ. Գոլովին) մեջ, դեկորատիվ–կիրառ. արվ–ում (Վ. Ս. Վասնեցով, Մ. Ա. Վռուբել), գրքի գրաֆիկայում (Ի. Յ. Բիլիբին):

ՆՈՐՎԵԳԱԿԱՆ ԾՈՎ, ծայրամաս. ծով Հս. սառուցյալ օվկ–ում՝ Սկանդ. թ–կղզու, Շետլանդյան, Ֆարերյան, Իսլանդիայի, Յան Մայենն և Արջի կղզիների միջև: Տարածքը՝ 1340 *կմ²*, խոր.՝ մինչև 3970 *մ*: Ն. ծ–ով է անցնում ***Նորվեգական հոսանքը*** (փչում է հս–արլ–ից Նորվեգիայի ափերը), որի շնորհիվ այն չի սառչում: Հարուստ է ձկներով: Գլխ. նվինգստ–ներն են Տրոնհեյմը և Նարվիկը:

ՆՈՐՎԵԳԱԿԱՆ ՀՈՍԱՆՔ, Ատլանտ. օվկ–ի տաք հոսանք, Հս–ատլանտ. հոսանքի ճյուղավորումը: Շարժվում է Նորվեգիայի ափի երկայնքով հս–արլ.: Մեղմացնող ազդեցություն ունի Սկանդ. թ–կղզու կլիմայի վրա:

ՆՈՐՎԵԳԱՑԻՆԵՐ, ժողդ, *Նորվեգիայի* հիմն. բնակչությունը (4,1 մլն, 2007): Ընդհ. քանակն աշխարհում՝ ավելի քան 10 մլն: Ապրում են նաև ԱՄՆ–ում (4,5 մլն, 2000), Կանադայում (432 հզ.) և այլուր: Լեզուն՝ նորվեգ.: Հավատացյալները հիմնականում լյութերական են, կան նաև կաթոլիկներ:

ՆՈՐՎԵԳԵՐԵՆ, *նորվեգացիների* լեզուն, Նորվեգիայի պետ. լեզուն: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի գերմ. ճյուղի սկանդ. խմբին: Հնագույն հուշարձանները X–XI դդ–ի ռունագիր արձանագրություններն են: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՆՈՐՎԵԳԻԱ (Norge), **Նորվեգիայի Թագավորություն** (Kongeriket Norge), պետություն Հս. Եվրոպայում: Սահմանակից է ՌԴ–ին, Ֆինլանդիային և Շվեդիային: Տարածքը՝ 323,8 հզ. *կմ²*, բն.՝ 4,66 մլն (2009): Մայրաքաղաքը՝ *Օսլո*: Պետ. լեզուն՝ նորվեգ.: Կառավարման ձևը՝ սահմանադրամիապետ.: Պետության գլուխը թագավորն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Բաժանված է 19 ֆյուլկեների (գվո–ներ): Հավատացյալները հիմնականում քրիստոնյա (լյութերական) են: Անդամակցում է ՄԱԿ–ին, ԵԱՀԿ–ին, ԱռտհԿ–ին, ՆԱՏՕ–ին ևն: Բարձր զարգացած տնտ–յամբ երկիր է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով շուրջ 69 հզ. ԱՄՆ դոլար է (2015): Արտահանում է մեքենաներ և սարքավորումներ, նավթ ու նավթամթերք, նավեր, ձուկ ևն, ներմուծում քիմիկատներ, սննդամթերք, մեքենաներ և սարքավորումներ ևն: Դրամ. միավորը՝ նորվեգ. կրոն:

Հնում Ն–ի տարածքը բնակեցված է եղել գերմ. ցեղերով: VIII դ–ի կեսերից մինչև XI դ. նորվեգացիները մասնակցել են վիկինգների արշավանքներին: IX–XI դդ–ում նորմանները (վիկինգները) արշավանքներ են կատարել Իսլանդիա (նվաճել են) և այլ երկրներ: IX–X դդ–ի սահմանագծին սկսվել է Ն–ի քաղ. միավորումը, որն ավարտվել է XI դ–ում՝ Օլաֆ II (1016–28) թագավորի օրոք: X դ–ի վերջից սկսվել է Ն–ի քրիստոնեացումը: XIV դ–ից Ն. ընկել է դանիական տիրապետության տակ, որը 1814–ին Քիլյան խաղաղության պայմանագրով երկիրը հանձնել է Շվեդիային: Վերջինս ուժով Ն–ին պարտադրել է շվեդա-նորվեգ. ունիան, որը գոյատևել է մինչև 1905–ը: ԱՀՊ–ի ժամանակ Ն. չեզոքություն է պահպանել, սակայն 1940–ի ապրիլի 9–ին գերմանաֆաշիստ. զորքերը գրավել են այն: Թագավորն ու կառ–յունը տեղափոխվել են Լոնդոն: 1942–ին ֆաշիստները Ն–ում ստեղծել են կառ–յուն, որի դեմ ծավալվել է Դիմադրության շարժումը: 1944–ի աշնանը խորհրդ. բանակը ազատագրել է Հս. Ն–ի մի մասը: 1945–ի մայիսի 8–ին Ն–ում գերմանաֆաշիստ. զորքերը հանձնվել են: 1949–ից անդամակցում է ՆԱՏՕ–ին: 1972–ի և 1994–ի հանրաքվեով Ն–ի բնակչությունը մերժել է անդամակցությունը Եվրոպ. տնտ. ընկերակցությանն ու ԵՄ–ին:

Հայերը Ն–ում բնակություն են հաստատել 1970–ական թթ–ից: Հիմնականում Լիբանանից, Իրանից, 1990–ական թթ–ից նաև Հայաստանից գաղթածներ են:

Ներկայում Ն–ում բնակվում է շուրջ 2000 հայ, հիմնականում՝ Օսլոյում: Օսլոյում գործում է Հայ-նորվեգ. միությունը, որը համայնքի ներկայացուցիչն է պետության առջև:

Մեծ եղեռնի տարիներին և դրան հաջորդած ժամանակաշրջանում հայ գաղթականների դրության բարելավման համար մեծ աշխ. է կատարել նորվեգացի հայտնի գիտնական և հումանիստ Ֆրիտյոֆ *Նանսենը*: 1988–ի Սպիտակի երկրաշարժից հետո Ն–ի Կառ–յան հատկացրած միջոցներով Սպիտակում կառուցվել է «Նորվեգական գյուղ», հիվանդանոց:

Ն. առաջիններից է ճանաչել ՀՀ անկախությունը (1992), 2007–ին Բերգեն ք–ում խաչքար է տեղադրվել՝ նվիրված Ֆ. *Նանսենին*:

ՆՈՐՅՈՎ Պանտելեյմոն Մարկովիչ (1900–1993), ռուս. երգիչ (բարիտոն): ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1947): 1925–54–ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մեներգիչ (Ժերմոն՝ Ջ. Վերդիի «Տրավիատա», Օնեգին՝ Պ. Ի. Չայկովկսու «Եվգենի Օնեգին», Դոն Ժուան՝ Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան», ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1942):

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՄՈՒԼԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, 2004–ից՝ «Նորություններ» ռուս. տեղեկատվ. գործակալություն, «РИА Новости», ԽՍՀՄ տեղեկատվ. գործակալություն, հիմնադրվել է 1961–ին Մոսկվայում՝ *«Սովինֆորմբյուրո»*–ի հիմքի վրա: Տեղեկատվություն է տրամադրել խորհրդ. մամուլին, ռադիոյին, հեռուստատեսությանը, թողարկել հեռուստաֆիլմեր, հրատարակել տեղեկագրեր, «Դեյլի ռևյու» (անգլ., 1963–ից), «Մոսկովսկիե նովոստի» (ռուս., 1980–ից) պարբ–ները: Հաղորդում է շուրջօրյա հրատապ տեղեկատվություն ռուս., եվրոպ. բոլոր լեզուներով, արաբ.: Թղթակց. կետեր ունի տարբեր քաղաքներում, ԱՊՀ–ում և ավելի քան 40 երկրներում:

ՆՈՐՈՒՆԻ (Նորաշխարհյան) Հակոբ Լևոնի (1923–1985), գրող, հրապարակագիր: 1951–ին՝ Բեյրութի *«Նոր աշխարհ»*, 1953–ին՝ *«Արեւ»*, 1956–66–ին՝ *«Արարատ–գրական»* պարբ–ների խմբ.: Եղել է ՍԴՀԿ և Զեյթունի հայրենակց. միության ղեկ–ներից, «Նոր սերունդ մշակութային շարժում» միության նախագահ: 1975–ին հայրենադարձել է: Հեղինակ է «Դողդոջ կայծեր» (1943), «Սահմանագլուխ» (1959), «Վերապրում» (1973), «Տարիներիս ապագան» (1983) բանաստեղծությունների, «Վարձու պուպրիկներ» (1970), «Մեղքի արահետեն» (1978) պատմվածքների ժող–ների, «Իշխանը» (1944), «Երջանկութեան ճամբան...», «Ինչ շուտ փոխուեցար» (երկուսն էլ՝ 1966) թատերգությունների և այլ գործերի:

«ՆՈՐՔ», գր., գիտ. և քաղ. հանդես (1922–26, 1928, Երևան): Խմբ–ներ՝ Աշոտ Հովհաննիսյան, Ասքանազ Մռավյան, վերջում՝ խմբագրակազմ:

«ՆՈՐՔ», գր–գեղ., հաս–քաղ. հանդես (1933–ից, Երևան, 1933–40–ին՝ «Խորհրդային գրականություն», 1940–43 և 1955–88–

ին՝ «Սովետական գրականություն», 1943–55–ին՝ «Սովետական գրականություն և արվեստ»): ՀԳՄ հրտ–յուն: *«Վերելք»* և *«Նոր ուղի»* գր. հանդեսների շարունակությունն է: Խմբ–ներ՝ Հարություն Մկրտչյան, Նորայր Դարաղյան, Համլակ Սիրաս, Ռուբեն Զարյան, Էդվարդ Թոփչյան, Հովիկ Մելիքյան, Սողոմոն Սողոմոնյան, Հրաչյա Քոչար, Վազգեն Մնացականյան, Էդվարդ Զրբաշյան, Ստեփան Կուրտիկյան, Հրաչյա Հովհաննիսյան, Ռուբեն Հովսեփյան, Ֆելիքս Մելոյան (1998–ից):

«ՆՈՐՔԱՐԻԴԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ», անցումը սպառող տնտ–յունից (որսորդություն, ձկնորսություն, հավաքչություն) արտադրող (երկրագործություն և անասնապահություն) տնտ–յան: Եզրույթն առաջարկել է Գ. *Չայլդը*: Նախապես ուսումնասիրվել է Մերձ. Արևելքը, որտեղ Զագրոսի, Տավրոսի, Լևանտի նախալեռներում մ. թ. ա. X–VIII հզ–ամյակներում տարածվել է որսորդությունն ու հավաքչությունը, կատարվել բույսերի ու կենդանիների ընտելացման առաջին փորձերը: Երկրագործությունը դարձել է նստակեցության հաստատուն հիմք, երևան են եկել երկարաժամկետ և խոշոր բնակավայրեր, արձանագրվել է ժողովրդագր. աճ, նկատվել հաս. կառույցների բարդացում: «Ն. հ.»–յան հատուկ կենտրոններ են առանձնացվել Հս. Հնդստանում, Արլ. Ասիայում, Կենտր. և Հվ. Ամերիկայում:

Հայաստանի տարածքում քաղաքակրթության անցման նախադրյալներն սկզբնավորվել են մ. թ. ա. X–VIII հզ–ամյակներում:

ՆՈՐՔԻ ՋՐԱՆՑՔ, սկիզբ է առնում Քանաքեռի ջրէկի ճնշման ավազանից, հոսում է Արաբկիրի ջրանցքով: Շահագործման է հանձնվել 1946–ին: Երկ.՝ 11,5 *կմ*, ջրթողունակությունը՝ 3 $մ^3/վ$: Ոռոգում է Երևանի մերձակա հողատարածքները:

«ՆՈՐՔ–ՄԱՐԱՇ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ, բուժհիմնարկ Երևանում (1993–ից): Ունի 3 հիմն. կլինիկ. ենթաբաժիններ՝ սրտի վիրաբուժ. և մեծահասակների ու մանկ. սրտաբան. կլինիկաներ: Հագեցած է ախտորոշման և վիրաբուժ. բուժման ժամանակակից սարքավորումներով. սպասարկում է նաև արտերկրից հիվանդների, տրամադրում է բժշկ. հեռակա խորհրդատվություն, զանազան տեղեկատվություն: Կենտրոնի առաջատար սրտավիրաբույժ Հակոբ (Հրայր) *Հովակիմյանի* գլխավորությամբ Հայաստանում սրտի վիրահատություններն ավելի են ծավալվել: Կենտրոնն ամենամեծն է Այսրկովկասում:

ՆՈՐՖՈԼՔ (Norfolk), կղզի Խաղաղ օվկ–ի արմ–ում, Ավստրալիայի «արտաքին տարածք»: Ունի հրաբխ. ծագում (բարձր.՝ մինչև 315 *մ*): Տարածքը՝ 36 $կմ^2$, բն.՝ 2,1 հզ. (2009): Պետ. լեզուն՝ անգլ.: Վարչ. կենտրոնը՝ Քինգսթոն: Դրամ. միավորը՝ ավստրալ. դոլար: Տնտ–յան հիմքը միջազգ. զբոսաշրջությունն է: Ավստրալիայի միջոցով արտահանում է գեղազարդիչ բույսերի սերմեր: Հայտնագործել է Ջ. *Կուկը* 1774–ին:

ՆՈՐՖՈԼՔ, ք. ԱՄՆ Վիրջինիա նահց–ում՝ Ատլանտ. օվկ–ի ափերին: Բն.՝ 234,5 հզ. (2010): Նորֆոլկ–Վիրջինիա–Բիչ ագլոմերացիայի կենտրոններց (բն.՝ 1,7 մլն): Հս. Ամերիկայի արլ. ծով. բեռնաշրջանառությունը նավահանգստ. համալիրով 2–րդն է (Նյու Յորքից հետո): ԱՄՆ–ի ռազմանավաշինության խոշոր կենտրոն է և գլխ. ռազմածով. հենակետ:

ՆՈՈՒ–ՀԱՈՒ (անգլ.՝ know–how – բառացի՝ գիտեմ՝ ինչպես), միջազգ. տնտ. հարաբերություններում արտոնագր. համաձայնագիր գիտելիքների, հմտությունների, փորձի փոխանակման վերաբերյալ՝ այս կամ այն տեխնոլոգիայի, համակարգի, հոսքագծի արտադր–յան կամ յուրացման համար:

ՆՈՈՒՄԵՆ (հուն.՝ noumenon), մտքին հասանելի, հակադիր է *ֆենոմենին*, որը ճանաչելի է զգայությունների միջոցով: Հասկացությունն առաջինն օգտագործել է *Պլատոնը*:

ՆՊԱՏ, **Նոյապատ**, լ–գագաթ Հայկ. լ–աշխարհում՝ *Ծաղկանց լեռներում*: Բարձր.՝ 2332 *մ*:

ՆՊԱՏ, Հայկ. տոմարի ամիսների 26–րդ օրվա անունը, կոչվել է *Նպատ* լ–ան անունով:

ՆՊԱՏԱԿ, որպես անմիջական շարժառիթ, ուղղորդում և կարգավորում է մարդու գործողությունները: *Արիստոտելի* փիլ–յան մեջ Ն. 4 պատճառներից վերջինն է (լատ.՝ causa finalis – վերջն. պատճառ)՝ «այն, հանուն ինչի կատարվում է որևէ բան»: Ն–ի հղացումը և իրագործման համար ձեռնարկվող միջոցների ընտրությունը բարոյագիտ–յան հիմն. խնդիրներից է:

ՆՋԱՄԵՆԱ (N'Djaména), *Չադի Հանրապետության* մայրաքաղաքը, Շարի գետի ափին: Բն.՝ 792 հզ. (2010): Ունի օդանավակայան, համալսարան, ազգ. թանգարան: Զարգացած են սննդի և թեթև արդ–յան ճյուղերը: Հիմնադրել են ֆրանսիացիները 1900–ին՝ որպես Ֆորտ Լամի ռազմ. հենակետ (վերանվանվել է 1973–ին): Մինչև 1958–ը եղել է ֆրանս. Չադ գաղութի վարչ. կենտրոնը:

ՆՈՒՆԱԿ, մինչև 1000 *մ* հեռ–յամբ թշնամու կենդանի ուժի և ռազմ. տեխնիկայի ոչնչացման զինամթերք: Ն–ները լինում են ձեռքի (հակահետևակ., հակատանկ., հատուկ) և *նռնականետի*:

ՆՈՒՆԱՔԱՐԵՐ (նման հատիկների գույնի նմանությամբ), կղզային ենթադասի միներալների խումբ: Հայտնի է մոտ 20 տեսակ: Զևավորում է իզոմորֆ շարքեր: Բյուրեղներ են, հատիկ. զանգվածներ: Կարծր.՝ 6,5–7,5, խտ.՝ 3,6–4,3 $գ/սմ^3$: Հղկված, գեղեցիկ, թափանցիկ Ն. թանկարժեք քարեր են:

ՆՈՒՆԵՆԻ (Punica granatum), նռնազգիների ընտանիքի թփերի և ծառերի ցեղ: Պտղատու մշակաբույս է: Ունի 2 տեսակ՝ մերձարևադարձ. շրջաններում, նաև ՀՀ հս–արլ. և հվ–արլ. մարզերում, ԼՂՀ–ում: Պտուղները պարունակում են շաքարներ, կիտրոնաթթու, տանիններ, C վիտամին: 1 ծառի բերքատվությունը՝ 50–60 *կգ*:

ՆՈՍԱՆՅՈՒԴ, մարդու և ողաշարավոր կենդանիների խոշոր նյարդացողուն: Նյարդավորում է ազդրի, սրունքի, ոտնաթաթի և ներբանի մաշկն ու մկանները: Բորբոքումը հայտնի է որպես *նպատնյարդարորը*:

ՆՈՍԱՆՅԱՐԴԱԲՈՐԲ, *իշիաս* (հուն.՝ ischion – նստուկ), *նպատնյարդի* բորբոքումն ավելի հաճախ միջողնային սկավառակների *օստեոխոնդրոզի* դեպքում: Դրսևորվում է նստատեղի, ազդրի, սրունքի շրջանների ցավերով և այլ ախտանշաններով, մաշկի զգացողության նվազմամբ, ազդրի և սրունքի մկանների ապաճումով ու մկան. ուժի թուլացմամբ:

ՆՈՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐ, ապարներ, որոնք առաջացել են ցամաքում կամ ջրավազաններում՝ ավելի վաղ գոյացած տարբեր ապարների քայքայման արգասիքների և օրգանիզմների մնացորդների նստվածքակուտակման հետևանքով: Ըստ նստվածքակուտակման բնույթի՝ Ն. ա. լինում են բեկոր., քիմ. և կենսածին:

ՆՎԱԳԱԽՈՒՄԲ, **օրկեստր** (հուն.՝ orxnstra – բեմի առջևի հարթակը հինհուն. թատրոնում, որտեղ տեղավորվել է երգչախումբը), տարբեր գործիքներ նվագող և նույն երաժշտ. երկը համատեղ կատարող երաժիշտների (12 և ավելի) խումբ: «Ն.» եզրույթը XVII–XVIII դդ–ի սահմանագծին փոխարինել է Եվրոպայում տարածված *կապելլա եզրույթին*: Ըստ կազմի՝ տարբերում են լար., փող., սիմֆ., ժող. գործիքների և այլ Ն–եր, ըստ ժանր. հատկանիշների՝ էստրադ., ջազ., զինվ. Ն–եր:

ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐԶ, պարզ (չորակավորված) աշխ. կատարողների աշխատավարձի մակարդակը: Սահմանում է պետությունը՝ օրենսդրությամբ կամ ձեռնարկատերերի ու արհմիությունների հետ համաձայնությամբ: ՀՀ–ում զուտ Ն. ա. 55 հզ. դրամ է (2017):

ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔ, մեխանիկայի վարիացիոն սկզբունքներից, որի համաձայն՝ մեխ. համակարգի տվյալ կարգի իրար հետ համեմատելի շարժումներից իրականանում է նվազագույն գործողության շարժումը:

ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿ, մարդու կամ ընտանիքի միագումար սպառման արժեք. գնահատականը, որը որոշվում է նվազագույն սպառող. զամբյուղի հիման վրա: Արտացոլում է բնակչության աղքատ խավերի սպառման կառուցվածքն ու ծախսերը և հաշվարկվում նվազագույն նորմերի հիման վրա: Ն. կ. կախված է երկրի սոցիալ–տնտ. զարգացման մակարդակից:

ՆՎԱՐՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 484, կնքվել է Սասանյան Պարսկաստանի և Սարզպան. Հայաստանի միջև Նվարսակ (այժմ՝ Նիսսակ) գ–ում (Պարսկահայք): Ն. պ–ով ավարտվել է *Վահանանց պատերազմը*՝ սպարապետ *Վահան Մամիկոնյանի* առաջնորդությամբ: Պարսից արքունիքը պարտավորվել է վերացնել կրոնափոխության հարկադրանքը և դժվարություններ չստեղծել Հայ եկեղեցու գործունեության համար, պահպանել Հայաստանում հաստատված նախարար. կարգը, չմիջամտել հայ նախարարների ներքին գործերին: Վերջիններս պետք է միայն ճանաչեին Պարսից արքայի գերագահությունը:

ՆՎԵՆԻ (Eucalyptus), **էվկալիպտ, տեն–դածառ**, մրտենազգիների ընտանիքի մշտադալար ծառերի (բարձր.՝ մինչև 100 *մ*) և թփերի ցեղ: Հայտնի է 500 տեսակ՝ Ավստրալիայում և հարակից կղզիներում (հիմնականում՝ արևադարձներում և մերձարևադարձներում): Բնորոշվում է արագ աճով (տարեկան մինչև 5 *մ*): Փայտանյութն օգտագործում են վագոնա– և նավաշինության, թղթի–թաղանթանյութի արտադր–յան մեջ: Կեղևը պարունակում է դաբաղող նյութեր, տերևները և մատղաշ ցողունները՝ նվենու յուղ:

ՆՎԻԿ (Arum), նվիկազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 25 տեսակ, ՀՀ–ում՝ 6՝ Արագածոտնի, Տավուշի, Վայոց ձորի, Սյունիքի և այլ

մարզերում: Կանաչ բույսը թունավոր է: Կան դեղաբույսեր:

ՆՎԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, եկեղեցու ձեռնադրված պաշտոնեության կամ եկեղեց. վարչության սրբազան իշխանություն: Ուղղափառ եկեղեցու Ն–յան բարձրագույն ատյան է տիեզ. ժողովը (ներկայացվել է տեղ. եկեղեցիների նվիրապետ. աթոռներով), Կաթոլիկ եկեղեցու նվիրապետ. իշխանությունը մարմնավորվում է *Հռոմի պապի* անձի մեջ: Ն–յան հիմն. աստիճաններին (սարկավագություն, քահանայություն, եպիսկոպոսություն) ՀԱԵ–ում ավելանում է կաթողիկոսությունը: Ի տարբերություն մյուս եկեղեցիների՝ Ն–յան գլուխը՝ Ամենայն հայոց կաթողիկոսը, մի կարգ բարձր է եպիսկոպոսությունից: Տես նաև *Ապրհանակարգություն*:

ՆՎԻՐԱՏՈՒ, **պատվիրատու, կտիտոր** (հուն.՝ ktitor – հիմնադիր–սեփականատեր), տաճարի (շինքի մանրակերտը ձեռքին) կամ գեղանկարչ. ստեղծագործության (սակավ՝ քանդ. և դեկորատիվ կիրառ. արվ–ի) պատվիրատուի պատկերը միջնադար. և Վերածննդի արվ–ում: Հայկ. արվ–ում պահպանված լավագույն օրինակներից են Գագիկ Ա–ի արձանը (Գագկաշեն տաճար, Անի, 1918–ից տեղը հայտնի չէ), Սմբատ և Կյուրիկե (Գուրգեն) Կյուրիկյանների (Հաղպատի վանքի Սբ Նշան եկեղեցի), Գագիկ Արծրունու (Աղթամար, Սբ Խաչ եկեղեցի) բարձրաքանդակները, «Կեռան թագուհու Ավետարանի» (1272), «Վասակ իշխանի Ավետարանի» (1268–84) և այլ ձեռագրերի նվիրատվ. պատկերները:

«ՆՎԻՐԻՐ ԿՅԱՆՔ», բարեգործ. հիմնադրամ: Ստեղծվել է 2009–ին Երևանում: Նպատակը ծանր հիվանդություններով տառապող երեխաներին օգնելն է: Հանգանակում է ֆին. միջոցներ՝ նրանց բուժման և առողջության վերականգնման համար, ցուցաբերում է սոցիալ. և հոգեբ. օգնություն, խթանում այդ ընագավառում կամավոր. աշխ–ները, աջակցում անհատույց արյան դոնորության զարգացմանը են: Համագործակցում է Ուռուցքաբանության գիտ. կենտրոնի, Արյունաբան. կենտրոնի, «Մուրացան» համալսարան. կլինիկայի հետ: Հիմնադրամի աշխ–ները համակարգում է հոգաբարձուների խորհուրդը (պատվ. նախագահ՝ ՀՀ առաջին տիկին Ռիտա Սարգսյան):

ՆՐԲԱԳԵՂ ՕԶԱՉՔ ՄՈՂԵՍ (Ophisops elegans), **վայելչակազմ օձագլուխ մողես**, իսկական մողեսների ընտանիքի օձաչք մողեսների սեռի մողես: Մարմնի երկ.՝ մինչև 6,2 *մ*, պոչը մարմնից կրկնակի երկար է: Թաքնվում է քարերի արանքներում և փորող կենդանիների բներում: ՀՀ–ում տարածված է Շիրակի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի և այլ մարզերում: Օգտակար է. ոչնչացնում է մնասատու միջատներ:

ՆՐԲԱԳԵԼԻԿՆԵՐ (Prunelidae), ճնճղուկանմանների կարգի թռչունների ընտանիք: Հայտնի է 12 տեսակ, ՀՀ–ում՝ 3 (ալպ., խայտաբղետ և անտառ. Ն.): Դժվար նկատելի թռչուններ են՝ փետրածածկի գայտուն գույների բացակայության պատճառով: Հիմնականում լռակյաց են: Երգը ցածր տոնայնության է:

ՆՈՒԱԴՈՒՆ, Դանու աստվածուհու տոհմի աստված իռլանդ. դից–յան մեջ, նրանց կառավարիչն ու ռազմիկը: Զոհվել է ֆոմորիների դեմ մարտում: Ըստ ավանդության՝ հնագույն իռլանդ. ցեղերը սերում են Ն–ից:

ՆՈՒԱԿՇՈՏ, *Մավրիտանիայի* մայրաքաղաքը: Բն.՝ 822 հզ. (2010): Նվինգատ՝ Ատլանտ. օվկ–ի ափին: Ունի օդանավակայան, համալսարան: Կան սննդի, թեթև, փայտամշակման ձեռն–ներ:

ՆՈՒԱՐԵ (Noiret) Ֆիլիպ (1930–2006), ֆրանսիացի դերասան: Խաղացել է Փարիզի թատրոններում: 1955–ից կինոյում ստեղծել է տարաբնույթ կերպարներ («Պառաված օրիորդը», «Մահափորձ», խորհրդ. էկրանին՝ «Առևանգում Փարիզում», «Դատավորը և մարդասպանը», «Ժամագործը Սեն Պոլից», «Հին հրացան», «Երեք եղբայր», «Աֆրիկացին», «Շուաններ», «Ընտանիք» ևն):

ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱ (Նուբարյան Նուբար Մկրտչի, 1825–1899), պետ–քաղ. գործիչ, ազգ. բարերար: *Պողոս Նուբարի* հայրը: 1850–ից Եգիպտոսում անցել է պետ. ծառայության, վարել բարձր պաշտոններ (1866–76, 1878–79 և 1881–88–ին՝ ԱԳ նախարար, 1878–79, 1884–89 և 1894–95–ին՝ վարչապետ): Զբաղվել է նաև Եգիպտոսի գաղութահայության հարցերով, հայ ժողդ–ի քաղ. ճակատագրի, մշակույթի ու լուսավորության խնդիրներով: 1878–ին կազմել և Բեռլինի վեհաժողովին է հղել արևմտահայերի վիճակի բարելավման իր ծրագիրը: Ն. Փ–ի արձանը կանգնեցվել է Ալեքսանդրիայում (1904), նրա անունով կոչվել են ավան ՀՀ–ում, փողոցներ՝ Կահիրեում և Ալեքսանդրիայում:

ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ ՍԱՐԱՎԱՆԴ, Երևանից հս–արլ.: Զբաղեցնում է Արարատյան դաշտի կենտր. մասը, բարձր.՝ 800–1300 *մ*: Մասնատված է մինչև 100 *մ* խոր–յան սելավաբեր հովիտներով: Լանդշաֆտը՝ չորտափաստան. և կիսաանապատ.:

ՆՈՒԲԱՐՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, գրադարան, հայկ. մշակույթի կենտրոն Փարիզում: Գործում է ՀԲԸՄ–ի հովանավորությամբ: Հիմնադրվել է 1929–ին՝ *Պողոս Նուբարի* բարերարությամբ և կոչվել նրա անունով: Ն. մ–ում պահվում են հայ և այլ ժողդ–ների պատմության ու մշակույթի վերաբերյալ մոտ 25 հզ. արժեքավոր հրտ–յուններ, պարբ–ների հավաքածուներ, ձեռագիր երկասիրություններ, գրչագրեր, քարտեզներ, լուսանկարներ ևն: Լույս է ընծայում *«Էթյուդ Արմէնիեն կոնպրամպորտեն»* հանդեսը, *«Ռևյու դ'իսթուար Արմենիեն կոնտրամպորտեն»* տարեգիրքը: Տնօրեններ՝ Արամ Անտոնյան, Արմենակ Սալմասյան, Արտաշես Գարտաշյան, Ռայմոն–Հարություն Գևորգյան (1997–ից):

ՆՈՒԲԱՐՅԱՆՆԵՐ, **Նուպարյաններ**, հայ գերդաստան Եգիպտոսում: Սերել են XVIII դ–ի վերջին Ղարաբաղից Կ. Պոլիս գաղթած առևտրական Մկրտիչ Նուբարի Մելիքյանի և *Ապրոյանների* գերդաստանի Պողոս *Յուսուֆյանի* քրոջ ամուսնությունից, որոնց զավակներն իրենց պապի անունով կոչվել են Ն.: Նշանավոր է եղել *Նուբար Փաշան*, որի գծով էլ շարունակվել է սերունդը: Ն–ի մյուս ճյուղը սերել է *Պողոս Նուբարի* և սամ. արքունի հանձնակատար Հովհաննես Տատյանի դստեր ամուսնությունից: 1919–23–ին Ն. վաճառել են իրենց կալվածքները և տեղափոխվել Ֆրանսիա: Պահպանվել են Ն–ի տոհմ. 2 դամբարան (Ալեքսանդրիայի հայկ. և Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանատներում):

ՆՈՒԲԱՐ–ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ, հիմնադրվել է 1866–ին Կ. Պոլսում: Սկզբնապես՝ գիշերօթիկ վարժարան: Գործել է միջնակարգ (երկրորդ.) դպրոցի ծրագրով: Վարժարանի սաներից են Գ. Զոհրապը, Ե. Տեմիրճիպաշյանը, Մ. Չերազը, Հ. Նիկողոսյանը և ուր.: Փակվել է 1876–ին: Սովորողները և ուսուցիչները տեղափոխվել են *Ներսեսյան վարժարան*:

ՆՈՒԲԻԱ (եգիպտ.՝ Քուշ, Քաշ), պատմ. մարզ Նեղոսի 1–ին և 5–րդ սահանքների միջակա հովտում՝ ժամանակակից Եգիպտոսի և Սուդանի տարածքներում: VII–XIV դդ–ում այստեղ գոյություն է ունեցել նաև *նուբիացիների* քրիստ. պետությունը: XIV դ–ի վերջերին բնակեցվել է արաբ. ցեղերով և մահմեդականացվել:

ՆՈՒԲԻԱԿԱՆ ԱՆԱՊԱՏ, Աֆրիկայում, մեծ մասամբ՝ Սուդանի տարածքում՝ Նեղոսի և Կարմիր ծովի միջև: Սարավանդ է՝ արլ–ից արմ. թեքված մակերևույթով (բարձր.՝ 1000–3000 *մ*) և կղզևնման լեռներով (բարձր.՝ 2259 *մ*): Զբաղվում են անասնապահությամբ:

ՆՈՒԲԻԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, արևելասուդան. լեզուների ճյուղ: Տարածված են Սուդանում և Հվ. Եգիպտոսում: Ներառում են հին նուբիերենը (VI–XIV դդ–ում՝ Նուբիայի պետ. լեզուն. ուներ ղպտ. գրի հիմքով ինչյուն. գիր) և այլ ժամանակակից լեզուներ:

ՆՈՒԲԻԱՑԻՆԵՐ (ինքնանվանումը՝ նուբա), ժողդ Հվ. Եգիպտոսում (1,7 մլն, 2010) և Հս. Սուդանում (500 հզ–ից ավելի), *Նուբիայի* բնիկ բնակչությունը: Խոսում են նուբիերեն: Հավատացյալները սուննի մահմեդական են:

ՆՈՒԳ (Guizotia), աստղածաղկազգիների ընտանիքի միամյա և բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 12 տեսակ՝ Աֆրիկայում: Մշակում են արիսինյան Ն.՝ Եթովպիայում և Հնդկաստանում: Սերմերը պարունակում են յուղ, որն օգտագործում են սննդի մեջ և տեխ. նպատակներով:

ՆՈՒԴԵԼՄԱՆ Ալեքսանդր Էմանուիլովիչ (1912–1996), ավիացիոն ինքնաշխատ զենքի հրեա կոնստրուկտոր: Սոց. աշխ. հերոս (1966, 1982): ԵՀՊ–ի տարիներին Ն–ի ղեկավարությամբ մշակվել է ավիացիոն գնդացիրների սերիա:

ԽՍՀՄ Պետ. (1943, 1946, 1951, 1970, 1979), Լենինյան (1964) մրց–ներ:

ՆՈՒԵՎՈ ԼԱՐԵԴՈ (Nuevo Laredo), ք. Մեքսիկայի հս–արլ–ում՝ Տամաուլիպաս նահանգում՝ Ռիո Բրավո գետ Նորդե գետի ափին՝ ԱՄՆ–ի սահմանին: Բն.՝ 395 հզ. (2010): Երկթղ. հանգույց է: Պանամերիկ. խճուղու սկզբնակետն է, առևտրի կենտրոն: Կան ամերիկ. ընկ–ների էլեկտրատեխ. և էլեկտրոն. արտադր–յան հավաքման ձեռն–ներ: Հիմնադրվել է 1755–ին:

ՆՈՒԵՎՈ ԼԵՈՆ (Nuevo Leon, պաշտոն. անվանումը՝ Ն. Լ–ի ազատ և ինքնիշխան նահանգ), նահագ Մեքսիկայում: Տարածքը՝ 64,5 հզ. *կմ*^{2}, բն.՝ 4,6 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ Մոնտեռեյ: Կազմված է 51 վարչ. մունիցիպալիտետներից:

«ՆՈՒՅԻՐՈՒՄ», ազգ., կրթ., մշակութ. պարբ. (1953–75, Բեյրութ՝ հայ., ֆրանս., անգլ., արաբ.): ՀԲԸՄ Հովակիմյան–Մանուկյան վարժարանի հրտ–յուն:

ՆՈՒԿԼԵԱՉՆԵՐ, կենդանի օրգանիզմում նուկլեինաթթուները ճեղքող ֆերմենտներ: Մասնակցում են սննդի օտարածին նուկլեինաթթուների մարսմանը, քայքայմանը և բջիջներում նուկլեինաթթուների սինթեզի ու քայքայման կարգավորմանը: Օգտագործում են նուկլեինաթթուների կառուցվածքի

հետազոտման և որոշ վիրուս. հիվանդությունների բուժման համար:

ՆՈՒԿԼԵԻՆԱԹԹՈՒՆԵՐ, **բազմանուկլեոտիդներ**, կենսաբանորեն ակտիվ բնական բարձրմոլ. օրգ. միացություններ՝ կազմված նուկլեոտիդների մնացորդներից: Ըստ Ն-ի բաղադրության մեջ մտնող ածխաջրի (դեզօքսիռիբոզ և ռիբոզ)՝ տարբերում են **դեզօքսիռիբոնուկլեինաթթու** (ԴՆԹ) և **ռիբոնուկլեինաթթու** (ՌՆԹ): Ն-ում նուկլեոտիդների հաջորդականությամբ որոշվում է նրանց առաջնային կառուցվածքը: Ն. պարունակվում են բոլոր կենդանի օրգանիզմների բջիջներում և կատարում են կարևոր ֆունկցիաներ գենետիկ. տեղեկույթի պահպանման և փոխանցման ժամանակ, մասնակցում են այնպիսի մեխանիզմների, որոնց միջոցով գենետիկ. տեղեկույթն իրացվում է բջջ. սպիտակուցների սինթեզում: Ն. օրգանիզմում գտնվում են ազատ վիճակում և սպիտակուցների (նուկլեոպրոտեիդների) հետ կոմպլեքս միացությունների ձևով:

ՆՈՒԿԼԵՈԶԻԴՆԵՐ, **գլիկոզիդներ**, որոնց բաղադրության մեջ մտնում են պիրիմիդինային հիմքի մնացորդը և ռիբոզ (ռիբոնուկլեոզիդներ) կամ դեզօքսիռիբոզ (դեզօքսիռիբոնուկլեոզիդներ) ածխաջուրը: Ն. կարելի է դիտել որպես նուկլեոտիդներից ֆոսֆորական թթվի անջատման արդյունք: Պարունակվում են բոլոր կենդանի օրգանիզմների *նուկլեինաթթուներում* և *նուկլեոտիդներում*:

ՆՈՒԿԼԵՈՊՐՈՏԵԻԴՆԵՐ, *նուկլեինաթթուների* և *ապիտակուցների* կոմպլեքս միացություններ: Լայնորեն տարածված են բնության մեջ: Ըստ Ն-ի կազմության մեջ մտնող նուկլեինաթթվի բնույթի՝ տարբերում են ռիբոնուկլեո- և դեզօքսիռիբոնուկլեոպրոտեիդներ: Վերջինները կազմում են բջիջների կորիզի ժառանգ. նյութի՝ քրոմատինի հիմքը: Ռիբո- Ն-ից են բաղկացած ռիբոսոմները, ինֆորմոսոմները, բազմաթիվ վիրուսներ:

ՆՈՒԿԼԵՈՏԻԴՆԵՐ, **նուկլեոզիդֆոսֆատներ**, նուկլեոզիդների ֆոսֆորական էսթերներ: Կազմված են ազոտային (պուրինային կամ պիրիմիդինային) հիմքից, ածխաջրից (ռիբոզ կամ դեզօքսիռիբոզ) և ֆոսֆորական թթվի 1 կամ մի քանի մնացորդից: Լինում են 1, 2, 3 և բազմաթիվ Ն-ի մնացորդներից կազմված միացություններ, որոնք համապատասխանաբար կոչվում են միա-, երկ-, եռ- և բազմանուկլեոտիդներ կամ նուկլեինաթթուներ: Ն-ից են բաղկացած նուկլեինաթթուները, բազմաթիվ կոֆերմենտներ և կենսաբանորեն ակտիվ այլ նյութեր:

ՆՈՒԿԼԻԴՆԵՐ, որոշակի մեծության միջուկի Z լիցքով (միջուկի պրոտոնների թիվ) և A զանգվածի թվով ատոմների (կամ ատոմների միջուկների) համախումբ: Նշանակում են համապատասխան քիմ. տարրի սիմվոլով՝ A (ձախից՝ վերևում) և Z (ձախից՝ ներքևում) ինդեքսներով, օր.՝ $^{12}_{6}C$: Նույն տարրի Ն. անվանում են *իզոտոպներ*: Ճառագայթաակտիվ տրոհվող Ն. կոչվում են ճառագայթանուկլիդներ (ռադիոնուկլիդներ):

ՆՈՒԿԼՈՆ (լատ.՝ nucleus – միջուկ), ատոմ. միջուկները կազմող տարր. մասնիկների՝ *պրոտոնի* և *նեյտրոնի* ընդհ. անվանումը:

ՆՈՒԿՈՒԱԼՈՖԱ (Nukualofa), Տոնգո թագավորության մայրաքաղաքը: Գլխ. նվինգստ-ը՝ Տոնգատապու կղզում: Բն.՝ 24,3 հզ. (2010):

ՆՈՒԿՈՒՄ, ք. Ուզբեկստանում՝ Ամուդարիայի աջ ափին, Կարակալպակիայի մայրաքաղաքը: Բն.՝ 295,2 հզ. (2014):

ՆՈՒՄԵԱ (Nouméa), *Նոր Կալեդոնիա* կղզու մայրաքաղաքը (Ֆրանսիայի անդրծով. տիրույթ): Նվինգստ՝ Խաղաղ օվկ-ի ափին: Հայտնի է նիկելի ձուլմամբ, դրա և պղնձի հանքանյութի արտահանումով: Բն.՝ 102,3 հզ. (արվարձաններով՝ 163,7 հզ., 2010):

ՆՈՒՄԵՐՈՎ, Բորիս Վասիլևիչ (1891–1941), ռուս. աստղագետ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1929): Աշխ-ները վերաբերում են տես. աստղագիտ-յանը, աստղաչափությանը, ծանրաչափությանը: ԽՍՀՄ հաշվող. ինստ-ի (ներկայում՝ ՌԳԱ տես. աստղագիտ-յան ինստ.) հիմնադիր-տնօրենը (1919–36): Սկզբնավորել է ԽՍՀՄ տարածքի ընդհ. ծանրաչափ. նկարահանումները: Բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ՆՈՒՄՄՈՒԼԻՏՆԵՐ (լատ.՝ Nummulites, < nummulus – մանր մետաղադրամ), *ֆորամինիֆերների* ենթախմբի մահացած միաբջիջ օրգանիզմների սեռ: Ն-ի մնացորդները հայտնի են Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի, Ամերիկայի արևադարձ. և մերձարևադարձ. երկրների վերին կավճի և պալեոգենի նստվածքներում: Վարել են մերձհատակ. կյանք: Ն-ի խեցիների կուտակումներն առաջացրել են նումուլիտային կրաքար, որը կիրառվում է որպես շինանյութ: Ն. կարևոր ուղեցույց բրածոներ են պալեոգենի շերտագրության համար:

ՆՈՒՅՆԱԿԱՆ ՄԱՄՆԻԿՆԵՐ, մասնիկներ, որոնք ունեն նույն ֆիզ. բնութագրերը՝ զանգվածը, էլ. լիցքը, սպինը ևն: Այդպիսի մասնիկները քվանտ. մեխանիկայում դիտարկվում են որպես սկզբունքորեն միմյանցից չտարբերվող:

ՆՈՒՅՆԱԿԱՆԱՅՈՒՄ (քիմ.), անհայտ քիմ. միացության նույնականության հաստատումը հայտնիի հետ՝ նրանց ֆիզ. և քիմ. հատկությունները համեմատելու միջոցով:

ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ, քվանտ. տեսության հիմնարար սկզբունք, ըստ որի՝ մասնիկների համակարգի վիճակները, որ ստացվում են նրանց նույնական մասնիկների տեղերը փոխանակելիս, հնարավոր չէ զանազանել ոչ մի փորձով, և այդ վիճակները պետք է դիտարկել որպես մեկ ֆիզ. վիճակ: Ն. ս–ից բխում է *նույնական մասնիկների* համակարգի ալիք. ֆունկցիայի համաչափությունը:

ՆՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՓԱՅՈՒԹՅՈՒՆ, օբյեկտիվ իդեալիզմի տարատեսակ, ըստ որի՝ բնության և ոգու, կեցության և մտածողության, օբյեկտի և սուբյեկտի տարբերակումը, հակադրումը և զարգացումն ածանցվում են մի նախասկզբից, որը ներքուստ տարբերակված չէ, այսինքն՝ «բացարձակ նույնականություն» է՝ «բացարձակ մտածողություն» (ըստ Ֆ. Շելինգի), «բացարձակ գաղափար» (ըստ Գ. Հեգելի): Ն. փ. հակադրվում է Ի. Կանտի ուսմունքի դուալիստ. միտումներին և Յ. Ֆիխտեի սուբյեկտիվ իդեալիզմին:

ՆՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ մաթեմատիկայում, հավասարում, որը ճիշտ է այդ հավասարման մեջ մտնող փոփոխականների բոլոր հնարավոր արժեքների համար:

ՆՈՒՆԵ, **Նինո** (մոտ 296–մոտ 340), քրիստոնեության քարոզիչ, տոնելի սրբուհի Հայաստանում և Վրաստանում: Ըստ հայկ. աղբյուրների՝ Ն. եղել է Հռիփսիմյանց կույսերից, որոնց հետ Հռոմից եկել է Հայաստան, այնուհետև գնացել Վիրք, անցել Փարվանա լճի մոտով, ապա ճզնել Մցխեթ-ի մոտակայքում, բուժել է Միհրան արքային և թագուհի Նանայի որդուն, ապա մկրտել (պաշտոն. տվյալներով՝ 326-ին): ՀԱԵ-ն ներկայում Ն-ի հիշատակության օրը նշում է Տոն Կաթողիկեին (Տոն Սր Էջմիածնի) հաջորդող երեքշաբթի՝ սբ Մանե կույսի հիշատակի հետ:

ՆՈՒՆՆՅԱՆ (Նոննի), գետ Չինաստանի հս-արլ-ում, Սունգարի ձախ վտակը: Երկ.՝ 1089 *կմ*, ավազանը՝ 244 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 700 *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Իլհուրի Ալին լ–շղթայից, հոսում Սունկյան դաշտավայրով: Նավարկելի է մինչև Ցիցիկար ք–ը:

ՆՈՒՆՈՒՖԱՐ, կանանց կովկաս. մենապար կամ զուգապար: Ձևավորվել է XIX դ–ի վերջերին, պարել են մինչև XX դ–ի 1–ին կեսը: Ն–ի մասին պահպանվել են միայն հիշողություններ, քանի որ ունեցել է անկայուն պարաձևեր և պարեղանակ: Այժմ Ն–ները մեծ մասամբ մանկ. պարեր են և կատարվում են նորաստեղծ քայլերով և պարեղանակով:

ՆՈՒՆՈՒՖԱՐ, տես *Կոկոտ*:

ՆՈՒՐՉԻ Արդոլիոսյան Մոհամադ (1905–1971), պարսիկ դերասան, ռեժ., դրամատուրգ, հաս. գործիչ: «Շահնամե» էպոսից բեմադրել է (կոմպոզիտոր Մինաբաշյանի հետ) «Ռոստամ և Թահմինե», «Ռոստամ և Քեյդոբադ», «Զալ և Ռուդաբե» հատվածները, խաղացել Ռոստամի դերը: Իրանի 1–ին ակադեմ. «Նոզադե Ֆարհանգ» (Թեհրան, 1944–45), «Ֆիրդուսի» (1946) թատրոնների հիմնադիրը: Բեմադրել է եվրոպ. դասականների գործերից (սեփ. թարգմ–յամբ), նաև իր «Մարիամ», «Լուսաբացի աքաղաղը» և այլ պիեսներ: Հեղինակ է «Խանը և ուրիշները» (1939), «Թատրոնի արվեստը» (1952) գրքերի:

ՆՈՒՐԻՋԱ (Нуджа) Բրանիսլավ (1864–1938), սերբ գրող, դրամատուրգ: Սերբիայի ԳԱ ակադ. (1933): Հեղինակ է «Կասկածելի անձ» (1887), «Հովանավորություն» (1888), «Սովորական մարդ» (1899, բեմ.՝ 1900), «Հաջի Լոյա» (1908), «Տիկին նախարարը» (1929), «Պարոն Դոլլարը» (1932), «Հանգուցյալը» (1937) և այլ պիեսների, «Ինքնակենսագրություն» (1924, հայ.՝ 1972) վեպի, «Մինիստրական խոճկոր» (հայ.՝ 1963) պատմվածքների ժող–ի:

ՆՈՒՊԱՐՅԱՆ Մեսրոպ Հովհաննեսի (1842–1929), բառարանագիր, թարգմանիչ, հրապարակախոս: Հեղինակ է «Բառարան ֆրանսերէնէ հայ-աշխարհիկ» (1892), «Առձեռն բառարան ֆրանսերէնէ հայ աշխարհիկ» (1911), «Գրպանի բառարան ֆրանսերէնէ հայերէն եւ հայերէնէ ֆրանսերէն» (1928) բառարանների, «Սգապսակ Հայաստանի» (1928) բանաստեղծությունների ժող–ի: Հայ. է թարգմանել Ֆ. Շատոբրիանի, Ժ. Ռասինի, Մոլիերի, Վ. Հյուգոյի, Վ. Շեքսպիրի և ուր. գործերից, «Մարսելյեզը» (1877–ին): Ֆրանսիայի ակադ–ի պաշտոնակալ (1913):

ՆՈՒՌՆՈՒՄԻ ԿԱՅԾՔԱՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐ, ՀՀ Կոտայքի մարզում՝ Նուռնուս գ–ից 1 *կմ* արլ.: Հանքանյութը կազմված է արևանկ, կրիստոբոլիտ, մոնտմորիլոնիտ, կալցիտ միներալներից: Սպիտակ դիատոմիտները պարունակում են 90–99 % SiO_2: Պաշարները հիմնականում սպառվել են:

ՆՈՒՍ (հուն.՝ nus – միտք, խելք, բանականություն), անտիկ փիլ–յան առանցք. հասկացություն, նշանակում է ոգի, բանականություն, իմաստ, միտք: Ն. հակադրվում է ***քաոսին***: ***Անաքսագորասը*** Ն. դիտել է իբրև աշխարհի կարգավորման հիմք: Արիստոտելի ուսմունքը Ն–ի (ինքն իրեն հայող և մտածող) տիեզ. «խելքի» մասին, որը «մտածողության մտածողությունն» է, ***նորպլատոնականության*** մեջ դարձել է Ն–ի մասին հայեցակարգի ամենակարևոր սկզբնաղբյուրը: «Ն.» հասկացությունը թարգմանաբար նշանակում է բանականություն (լատ.՝ ինտելեկտ):

ՆՈՒՎԱՅՐԻ Շիհաբ ադ–Դին Ահմեդ (1279–1332), արաբ հանրագիտակ (Եգիպտոս): Հեղինակ է «Ցանկությունների սահմանը բանագիտության մեջ» (հ. 1–31) հանրագիտարանի, որն աչքի է ընկնում տեղեկությունների ճշգրտությամբ:

«ՆՈՒՎԵԼ Դ'ԱՐՄԵՆԻԱ» («Nouwlles d'Arménie» – «Լուրեր Հայաստանից»), հաս–քաղ., մշակութ. ամսագիր (1992–ից, Փարիզ՝ ֆրանս.): Հիմնադիր–խմբ.՝ Արա Թորանյան:

ՆՈՒՎԵԼ (Nouveau) Ժերմեն (1851–1920), ֆրանսիացի բանաստեղծ: Սիմվոլիզմի ներկայացուցիչ: Հեղինակ է «Վալենտինի օրվա բացիկներ» (հրտ.՝ 1922), «Մուրացկանի գրառումները» (հրտ.՝ 1949) և այլ ժող–ների:

ՆՈՒՏԱՑԻԱ (լատ.՝ nutatia – տատանում), **առանցքաճոճք**, մարմնի սեփ. պտույտի առանցքի տատանող. շարժումը ***պրեցեսիայի*** հետ միաժամանակ, որի դեպքում փոխվում է մարմնի սեփ. և պրեցեսիայի առանցքներով կազմված անկյունը: Աստղագիտ–յան մեջ Ն. Երկրի պտտ. առանցքի ոչ մեծ տատանումներն են, որոնք պայմանավորված են Արեգակի ու Լուսնի ձգողությամբ և ազդում են Երկրի պրեցեսիային շարժման վրա:

ՆՈՒՐԲ (ԲԱՐԱԿ) ԹԱՂԱՆԹՆԵՐ, պինդ կամ հեղուկ (հազվադեպ՝ գազանման) շերտեր մակրոսկոպիկ ֆազերի միջև: Լինում են սակավակայուն գործադրույն (երբեմն՝ գունավոր) թաղանթներ (հաստությունը՝ մի քանի տասնյակ *նմ*), ավելի նուրբ թաղանթներ (մոտ 7–15 *նմ*), սև թաղանթներ և նյուտոնյան սև թաղանթներ (3–5 *նմ*): Սև թաղանթներն առաջանում են կայուն փրփուրներից և էմուլսիաներից: Հակադարձ էմուլսիաներում առաջացած նյուտոնյան սև թաղանթները կառուցվածքով նման են կենսաթաղանթներին: Լայն կիրառություն ունեն թաղանթ. տեխնոլոգիաներում և կիսահաղորդչ. սարքերի արտադր–յան մեջ:

ՆՈՒՐԲ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՍԻՆԹԵԶ, օրգ. նյութերի փոքրաքանակ բազմափուլ արտադր–յուն: Ն. օ. ս–ով արտադրվում են դեղանյութեր, պեստիցիդներ և գդտ. քիմիացման այլ նյութեր, ներկանյութեր, գործվածքեղենի համար օժանդակ նյութեր, հոտավետ նյութեր, հավելանյութեր պոլիմեր. նյութերի, կինոլուսանյութերի համար, քիմ. ռեակտիվներ ևն: ՀՀ–ում Ն. օ. ս–ի գիտ. ուսումնասիրություններն սկսվել են 1950–ական թթ–ին ՀՀ ԳԱԱ ՆՕՔԻ–ում, որտեղ կատարված մշակումներով սկսվել է որոշ դեղանյութերի արտադր–յուն:

ՆՈՒՐԲ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀՀ ԳԱԱ Արմենակ Մնջոյանի անվան (ՆՕՔԻ), Օրգ. և դեղագործ. քիմիայի գիտատեխնոլոգ. կենտրոնի կազմում (2006): Կազմակերպվել է 1955–ին՝ Արմենակ ***Մնջոյանի*** նախաձեռնությամբ: Այստեղ սինթեզում են նոր նպատակային օրգ. միացություններ, ուսումնասիրում դրանց կենսբ. ակտիվությունը: Ինստ–ի մշակումներից են՝ ***դիթիլին***, ***գանգլերոն***, սուրեխոլին (շնչառության խթանիչ), ***արփենալ***, ***քվատերոն***, մեսֆենալ (հիպերտոնիկ հիվանդություն, խոց. հիվանդություն, բրոնխ. ասթմա), ***ֆուրրոմեզան***, նալեցին (որովայնային տիֆ, դիզենտերիա), էթփենալ (ստենոկարդիա, բրոնխ. ասթմա), ***պուֆեմիդ***, թիոդին: Պարբերաբար հրատարակում է «Տարացիկլիկ միացությունների սինթեզներ» ժող–ը, որը թարգմանվում է անգլ. ԱՄՆ–ում: ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան (1971): Տնօրեններ՝ Արմենակ Մնջոյան, Սարգիս Վարդանյան, Բագրատ Ղարիբջանյան, Վիգեն Թոփուզյան (2005–ից):

ՆՈՒՐԵԵՎ Ռուդոլֆ Համետովիչ (1938–1993), ռուս. բալետի արտիստ, բալետմայստեր, դիրիժոր: 1958–61–ին՝ Լենինգրադի ՕԹԹ–ի մենապարող (Այլբերտ՝ Ա. Ադանի «Ժիզել», Բազիլ՝ Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ», ևն): 1983–89–ին՝ Փարիզի օպեր. թատրոնի բալետի խմբի գեղ. ղեկ.: 1961–ից հանդես է եկել Մեծ Բրիտանիայի թագավոր. թատրոնի և այլ խմբերում: Ն–ի համար բալետներ են բեմադրել Ֆ. ***Աշտոն***, Ռ. Պետտին, Մ. ***Բեժարը***, Մ. ***Գրեհեմը*** և ուր.: Ն. բեմադրել է Պ. Ի. Չայկովսկու «Շչելկունչիկ» (1967), Ս. Ս. Պրոկոֆևի «Ռոմեո և Ջուլիետ» (1977), «Փոթորիկ» (երաժշտությունը՝ Պ. Ի. Չայկովսկու, 1982) և այլ բալետներ: Նկարահանվել է կինոյում («Ես պարող եմ», «Վալենտինո» ևն):

ՆՈՒՐԻԿՅԱՆ Բենիամին Ղազարի (1894–1988), գրող, խմբ.: 1913–ից՝ ԱՄՆ–ում: Պսակավոր արվեստից (1920), Մագիստրոս արվեստից (1921): «Նոր գիր» գր. խմբակի (1936–37) ղեկ–ներից, 1939–54–ին՝ համանուն ամսագրի խմբ.: Հեղինակ է «Այգեկութք» (1937), «Պանդուխտ հոգիներ» (1958), «Կարոտ հայրենի» (1978) պատմվածքների, ուղեգրությունների ժող–ների: Խմբագրել և հրատարակել է «Թղկատինցին եւ իր գործը» (1927) աշխ–ը:

ՆՈՒՐԻԿՅԱՆ Նորայր Արամի (ծ. 1948), ծանրորդ: Բուլղարիայի վաստ. մարզիկ (1971), վ. մ. (1979): Սոց. աշխ. հերոս (1976): Օլիմպ. (1972, 1976), աշխարհի (1972, 1976), Բուլղարիայի բազմակի (1967–76), Եվրոպայի (1976) չեմպիոն: Բուլղարիայի ազգ. հավաքականի մարզիչ (1976–90), ավագ մարզիչ (1990–92): Ծանրամարտի միջազգ. ֆեդերացիայի փոխնախագահ (2000), պատվ. նախագահ (2005–ից):

ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ Կառլեն Արսենի (1929–1982), քանդ.: Հեղինակ է կոթող., պլաստիկ արտահայտչականությամբ, արդիական գործերի («Վահագն Վիշապաքաղ», 1968, Էջմիածնի խճուղի, «Արծիվ», 1969, Քանաքեռի ալյումինի գործարանի պուրակ, «Կոմիտաս», 1969, «Հայկ Նահապետ», 1970, «Տորք Անգեղ», 1982, Նոր Նորքի 2–րդ զանգված, ևն):

ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ Սարգիս Շավարշի (ծ. 1949), ջրաշինարար: Տեխ. գիտ. դ–ր (1996): 2000–ից՝ «Հիդրոէներգետիկա» ընկ–յան տեխ. տնօրեն: Աշխ–ները վերաբերում են հիդրոտեխ. կառույցների նախագծման և տեխ. վիճակի հարցերին:

ՆՈՒՐՄԻ (Nurmi) Պաավո (1897–1973), ֆինն վազորդ: Երկար տարածությունների վազքի օլիմպ. խաղերի 9–ակի չեմպիոն (1920, 1924, 1928), տարբեր տարածությունների՝ աշխարհի բազմակի ռեկորդակիր (1922–31):

ՆՈՒՐՊԵԻՍՈՎ Աբդիժամիլ Կարիմի (ծ. 1924), ղազախ գրող: Ղազախ. ԽՍՀ ժող. գրող (1985): Հեղինակ է «Կուռլանդիա» (1950, 2–րդ հրտ.՝ «Երկար սպասված օրը», 1958), «Արյուն և քրտինք» (1961–70) պատմահեղ. եռերգության, «Երկնագույն լեռների երկրամասը» (1979) ակնարկների ժող–ի, «Վերջին պարտքը» (2000) վեպերկերգության: ԽՍՀՄ Պետ. (1974), Մ. Ա. Շոլոխովի անվ. միջազգ. (2003) մրց–ներ:

ՆՈՒՑԵԼՈՒՍ (լատ.՝ nucella – ընկուզիկ), սերմնավոր բույսերի սերմնաբողբոջի կենտր. մասը (կորիզը), համապատասխանում է պտերանմանների մեգասպորանգիումին: Կորիզը բաժանվելով առաջացնում է 4 մեգասպորներ, որոնցից մեկը վերաճում է իգական գամետոֆիտի, մյուս 3–ը ոչնչանում են:

ՆՈՒՑՈՒԲԻՉԵ Շալվա Իսակի (1888–1969), վրացի փիլ., գրականագետ: Վրաստանի ԳԱ ակադ. (1944): Հեղինակ է «Արևելյան Վերածնունդը և եվրոպականտրոնության քննադատություն» (1941) աշխ–յան: Ստեղծել է, այսպես կոչված, ալետոտրամաբ. ռեալիզմի (ուսմունք ճշմարտության մասին) ուսմունքը: Վրաց. փիլ–յան պատմության խոշորագույն հետազոտողներից է:

ՆՓՐԿԵՐՏ, **Նփռետ**, գվո ***Աղձնիք*** նահանգում՝ Արմ. Տիգրիսի ձախափնյա Ապար (այժմ՝ Ամբարչա) և Քաղրիթ (Բաթմանսու) վտակների միջագետքում: Մ. թ. ա. IX դ–ի վերջ–VIII դ–ում մտել է Վանի, VI դ–ի 1–ին քառորդին՝ Երվանդյանների, ապա՝ Արտաշեսյանների թագավորությունների մեջ: Հայաստանի 387–ի բաժանումով անցել է Հռոմ. կայսրությանը, 536–ից եղել է բյուզ. Չորրորդ Հայք կուսակալության կազմում: XVI դ–ի սկզբին նվաճել է Օսմ. սուլթանությունը. մտել է Դիարբեքիր նահանգ–ի մեջ: Նշանավոր էր Նփրկերտ կենտրոնը: XX դ–ի սկզբին Ն–ի տարածքի 130 բնակավայրի 30 հզ. հայ բնակչությունը 1915–ին կոտորվել է:



Շ, հայ. այբուբենի 23-րդ տառը, անվանումը՝ շա: Ունի ***գրչագիր***, ***երկաթագիր***, ***բոլորգիր***, ***շղագիր***, ***նոտրգիր*** տառատեսակները: Հայ-ի միջատամնային խուլ շփական բաղաձայն հնչյուն (հնչույթ) է: Թվային արժեքը՝ 500:

ՇԱԲԱԹ (եբր. – հանգիստ), սրբազան և տոն. օր հուդայականության մեջ, Աատծու և Իսրայելի ժողդ-ի ուխտի խորհրդանիշը: Սահմանվել է Եգիպտոսից հեռանալիս: Շ. 10 պատվիրաններից է. այդ օրն ուղղափառ հուդայականները զերծ են մնում որևէ աշխ. կատարելուց:

ՇԱԲԱԼԻՆ Ալեքսանդր Օսիպովիչ (1914–1982), խորհրդ. ՌԾՈՒՀ փոխծովակալ (1969): ԽՄ կրկնակի հերոս (1944): ՀՄՊ-ի ժամանակ եղել է ականակիր նավերի ջոկատի հրամ.:

ՇԱԲԴԱՐ Օսիպ (Շաբդարով Իոսիֆ Արխիպովիչ, 1898–1937), մարի գրող: Հեղինակ է «Տավիղների հնչյունները» (1929), «Պողպատե հնչյուններ» (1933) քնար. բանաստեղծությունների ժող-ների, «Կնոջ ուղին» (1929–36) վեպի և այլ գործերի: Անհիմն բռնադատվել է, գնդակահարվել:

ՇԱԲԴԱՐ (Trifolium resupinatum), **պարսկական երեքնուկ**, ***բակլազգիների*** ընտանիքի միամյա կերաբույս: Արարատյան դաշտում շրջանացվում է Արարատյան-1 սորտը: Հնձվում է 1–3 անգամ: Կանաչ զանգվածի բերքը՝ 300–400 *գ/հա*, խոտինը՝ 80–100 *գ/հա*: Մեղրատու է:

ՇԱԲԻ (աշ Շաբի) աբու ալ-Քասիմ (1909–1934), թունիսցի արաբ բանաստեղծ: Ռոմանտիկ. հոսանքի հիմնադիրը «նոր» արաբ. պոեզիայում: Հեղինակ է «Արաբների բանաստեղծական պատկերացումները» (1929) գրաքննադատ. աշխ-յան:

ՇԱԲԼԻՈՎՍԿԻ Եվգենի Ստեպանովիչ (1906–1983), ուկրաինացի գրականագետ: Ուկրաինայի ԳԱ թղթ. անդամ (1934): Ուկր. ԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1972): Հեղինակ է «Տ. Գ. Շևչենկոն և ռուս հեղափոխական դեմոկրատները: 1858–1861» (1962), նաև ուկր. գրկ-յան պատմությանը վերաբերող աշխ-ների:

Լենինյան (1964), Ուկր. ԽՍՀ Տ. Շևչենկոյի անվ. Պետ. (1979) մրց-ներ:

ՇԱԲՈՅԱՆ Աղասի Համբարձումի (1921–2004), պարուսույց: ՀՀ վաստ. արտիստ (1961): 1941-ից՝ Լենինականի ֆիլհարմոնիայի մենակատար և բալետմայստեր, 1949–51-ին՝ Երկաթուղայինների մշակույթի պալատի երգի-պարի, 1951-ից՝ «Շիրակ» (2000-ից՝ Շ-ի անվ.) ժող. պարի անսամբլների գեղ. ղեկ.: Բեմադրել է «Հովիվների պարը», «Նազպար», «Քոչարի» և այլ պարեր, «Փառք հայրենիքին» սյուիտը: Հեղինակ է «Կոմիտաս», «Երազ տեսա», «Ցնծություն» և այլ պար. բեմավորումների: ՀՀ «Սովսես Խորենացի» մեդալ (1999):

ՇԱԲՈՅԱՆ Սերգեյ Հակոբի (1940–1997), ռադիոճարտարագետ: Տեխ. գիտ. դ-ր (1986), պրոֆ. (1988): Աշխ-ները վերաբերում են կիսահաղորդչ. (սիլիցում.) բյուրեղների արատներին, հզոր կիսահաղորդչ. տեխնիկայի կառուցվածքին և ստեղծման արտադրողակարգին: Հզոր տրանզիստորի հիման վրա մշակել է միաբյուրեղ սիլիցում. թիթեղի հիմքով ինտեգրալ սխեմաներ:

ՇԱԲՐՈԼ (Chabrol) Կլոդ (1930–2010), ֆրանսիացի կինոռեժ.: Նկարահանել է դրամատիկ. («Գեղեցկատես Սերժը», 1958, «Զարմիկներ», 1959, «Լանդրյու», 1963, «Տիկին Բովարի», 1991, ևն), քր. թեմաներով («Մսագործը», 1970, «Արյունոտ հարսանիք», 1973, «Դժոխք», 1994, «Բելլամի», 2009, ևն) կինոնկարները: Իր մի շարք ֆիլմերի սցենարիստն է:

ՇԱԳԱԼ (Chagall) Մարկ (Մոիսեյ Զախարովիչ, Մովշա Խացկելև,1887–1985), հրեա գեղանկարիչ, գրաֆիկ, բեմանկարիչ: Գործերին (նկարներ, վիտրաժներ, պատկերազարդումներ, աստվածաշնչ., նաև հրեական կենցաղի պատկերներ) բնորոշ են անիրական տարած. հորինվածքները, գծանկարի արտահայտչականությունը, ֆանտաստիկ. գուներանգի հուզականությունը («Քաղաքի վրայով», 1917): Նկարազարդել է գրքեր («Աստվածաշունչ», 1931–36, վիմագրություն), նաև Փարիզի օպեր. թատրոնի առաստաղը (1964): Շ-ի «Ամառանոց» (1918) նկարը ՀԱՊ-ում է:

ՇԱԳԱՆԱԿԱԳԵՂՁ (Prostata, gl. prostatica), տղամարդու և արու կենդանիների սեռ. համակարգի ոչ զույգ գեղձ (նման է շագանակի): Մարդու Շ. տեղակայված է փոքր կոնքում՝ միզապարկի հատակի և ուղիղ աղիի միջև: Կազմված է 3 բլթից՝ 30–40 առանձին գեղձիկներից, որոնց ծորանները բացվում են միզուկի շագանակ. հատվածի մեջ: Արտադրում է կաթնագույն թանձր արտազատուկ, որը կազմում է սերմնահեղուկի բաղադրության մեծ մասը և պահպանում սերմնաբջիջների կենսունակությունը: Շ-ի հաճախ հանդիպող հիվանդություններն են Շ-ի բորբոքումը (պրոստատիտ) և ***գեղձուռուցքը*** (ադենոմա):

ՇԱԳԱՆԱԿԱԳԵՂՁԻ ԳԵՂՁՈՒՌՈՒՑՔ, տարեց տղամարդկանց շագանակագեղձի հիվանդություն (ադենոմա). բնորոշվում է շագանակագեղձի մեծացմամբ, միզարձակման դժվարացմամբ, հաճախակի միզելու ցանկությամբ: Բարդությունը՝ սուր միզապահություն:

ՇԱԴԱՂԵԱՆՆԵՐ, **Շադղադեանք**, քրդ. ծագում ունեցող ամիրայական տոհմ Հայաստանում X–XII դդ-ում: Շ-ի առաջին ներկայացուցիչը՝ Մուհամմադ իբն Շադդադը, 951-ին գրավել է Դվինը, 954-ից ապաստանել Վասպուրականում, 971-ին՝ հաստատվել Գանձակում: 1022-ին Շ-ից Աբդու-լ-Ասվարը վերստին տիրել է Դվինին, որտեղ Շ. իշխել են մինչև 1130-ը: Շ-ի մի ճյուղը 1072-ին հաստատվել է Անիում և իշխել (ընդմիջումներով) մինչև 1199-ը: Քաղ. ասպարեզից հեռացրել են ***Զաքարյանները***:

ՇԱԴԻ (Իվանով) Իվան Դմիտրևիչ (1887–1941), ռուս. քանդ.: Հեղինակ է հեղ-ոմանտիկ. ընդհանրացված խորհրդանշ. կերպարների («Սալաքարը պրոլետարիատի զենքն է», 1927, ևն), մահարձանների, հուշարձանների (Մ. Գորկու, Մոսկվա, նախօրինակը՝ 1939), դիմաքանդակների: Շ-ի «Վ. Ի. Լենին» (մարմար, 1932), «Մ. Գորկի» (բրոնզ, 1939) գործերը ՀԱՊ-ում են: ԽՍՀՄ Պետ. մրց. (1952, հետմահու):

ՇԱԴՐԻՆ Վլադիմիր Նիկոլաևիչ (ծ. 1948), ռուս մարզիկ (տափօղակով հոկեյ): ԽՍՀՄ ս. վ. վ. (1971): Ձմեռ. օլիմպ. խաղերի (1972, 1976), աշխարհի և Եվրոպայի (1970–75), ԽՍՀՄ բազմակի (1967–70) չեմպիոն:

ՇԱԴՈՒՆՑ Կոնստանդին Շահենի (ծ. 1933), շինարար: Երկրբ-հնքբ. գիտ. դ-ր (1976), պրոֆ. (1976): ՌԽՖՍՀ վաստ. շինարար, գիտ. վաստ. գործիչ: Աշխ-ները վերաբերում են գետնահողերի մեխանիկայի (մասնավորապես՝ սողանքների և լանջերի կայունության) հարցերին: Բարձրագույն դպրոցի միջազգ., Արդ. էկոլոգիայի ակադ-ների անդամ:

ՇԱԴՈՒՆՑ Սուրեն Կոստանդինի (1898–1937), խորհրդ. կուս. և պետ. գործիչ: 1928–31-ին աշխատել է ՀամԿ(բ)Կ ԿԿ-ում: 1931-ին նրա ղեկավարությամբ Տաջիկստանում ջախջախել են հակախորհրդ. բասմաչներին:1934–36-ին՝ Տաջիկստանի կոմկուսի ԿԿ 1-ին քարտուղար: Լենինի շքանշան (1935):

ՇԱԹԻՐՅԱՆ Միքայել Ալեքսանդրի (1916–1985), գրող, խմբ.: ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1985): ՀՄՊ-ի ժամանակ՝ զինվ. թղթակից: 1966–69-ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար, միաժամանակ՝ ***«Գրական թերթի»***, 1973–75-ին՝ ***«Լիտերատուրնայա Արմենիա»*** ամսագրի խմբ.: Հեղինակ է «Պատմվածքներ» (1950), «Քինվորներ» (1955), «Ասք արմավենու մասին» (1967, գերմ.՝ 1975) պատմվածքների ժող-ների, «Հեղափոխության գեներա-

լը» (1978) վեպի, «Արծաթե դար» (գիրք 1, 2, 1983, 1986) պատմավեպի, «Գարունը նորից եկավ» (1960) վիպակի, «Փորձություն» (1948) և այլ պիեսների, «Նվագախմբի տղաները» (1960) կինոսցենարի:

ԽՍՀՄ Կարմիր աստղի (1944), ՀՄՊ 2-րդ (1945) և 1-ին (1985) աստիճանների, «Պատվո նշան» (1971) շքանշաններ:

ՇԱԹԻՐՅԱՆ Սերգեյ Ալեքսանդրի (1907–1959), կոմպոզիտոր, դիրիժոր: 1924–28-ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի, 1934–36-ին՝ ԵՕԹԹ-ի, 1937–41-ին՝ Լենինգրադի ռադիոյի սիմֆ. նվագախմբերի դիրիժոր, 1946–47-ին՝ Ջիշնևի, 1947–48-ին՝ Երևանի ֆիլհարմոնիկ նվագախմբերի գլխ. դիրիժոր: Հեղինակ է սիմֆ. սյուիտների, կվարտետի, ռոմանսների, թատրոնի և կինոյի երաժշտության:

ՇԱԹՐՅԱՆ Լևոն, **Միլվիա–Մարիա** (1880–1937), գրող-երգիծաբան, հրապարակախոս: 1920–22-ին՝ «Շավիղ–Իգնատ աղա» երգիծ. շաբաթաթերթի խմբ. (Երվանդ *Օտյանի* հետ): Հեղինակ է «Չորս հովերէն» հոդվածաշարի, «Յաւին տունը» (1909) երկի, «Բերայի հովարտաները» (1913) երգիծ. նորավեպի, «Բաբելոնի աշտարակը» (բեմ.՝ 1936) կատակերգության:

ՇԱՒԻՆՍԿԻ Վլադիմիր Յակովլևիչ (ծ. 1925), ուկրաինացի կոմպոզիտոր: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1986): 1998-ից՝ «Առնո Բաբաջանյան» հիմնադրամի նախագահ: 2004-ից՝ ԱՄՆ-ում: Հեղինակ է «Մի՛ լացիր, աղջի՛կս» (1971), «Ժպիտ» (1974), «Երկնագույն վագոն» (1976) և այլ երգերի, նաև մուլտֆիլմերի («Չերուրաշկա», «Կոկորդիլոս Գենան» ևն) երաժշտության:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1981):

ՇԱԼԱԽՈ, տղամարդու այրկովկաս. մեանապար (XIX–XX դդ.): Մեղեդին գրառել, դաշնամուրի համար մշակել ու կատարել է Նիկողայոս Տիգրանյանը (1895, տպ.՝ 1900): Պարաքայլերն ունեն բարդ ու կտրուկ շարժումներ, պարաձևը՝ ծնկածալ նստումներ (չաթմա), պտույտներ ու բարձր թռիչքներ: Երաժշտ. չափը՝ 6/8:

ՇԱԼԳՐԵՆ (Chalgrin) Ժան Ֆրանսուա (1739–1811), ֆրանսիացի ճարտ.: Նապոլեոն I-ի պալատ. ճարտ-ը: Ամպիրի ոճով ստեղծել է դաս. ավանդույթների զուսպ մեկնաբանությամբ կառույցներ (Սեն Ֆիլիպ դյու Ռուլ եկեղեցի, 1772–84, Սեն-Սյուլպիս եկեղեցու ճակատը, 1776–88, Լյուքսեմբուրգի պալատի գլխ. աստիճանները, 1803–07, բոլորը՝ Փարիզում, ևն):

ՇԱԼԻՆ Ռադիի Եվգենևիչ (1933–2006), ռուս. նյութագետ: ՌԳԱ թղթ. անդամ (1994): Աշխ-ները վերաբերում են ավիացիոն տեխնիկայի համար կառուցվածք. նյութերի ստեղծմանն ու դրանց արտադրման տեխնոլոգիային:

Լենինյան (1981), ՌԴ Պետ. (2001) մրց-ներ:

ՇԱԼԼ (Shull) Կլիֆորդ Գլենվուդ (1915–2001), ամերիկացի ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են միջուկ. ֆիզիկային, նեյտրոն. ֆիզիկային, պինդ մարմնի ֆիզիկային: Մշակել է նեյտրոն. դիֆրակցիայի մեթոդը: Նոբելյան մրց. (1994):

ՇԱԼԼԻ (Schally) Էնդրյու Վիկտոր (ծ. 1926), ամերիկացի լեհ բժիշկ, գիտնական: Բացահայտել է ուղեղում պեպտիդային հորմոնների արտազատումը: Նոբելյան մրց. (1977, Ռ. *Գիյմենի* հետ):

ՇԱԼՅԱՆ Ժերար (ծ. 1930), հրապարակախոս, քաղաքագետ: Հարվարդի համալսարանի պրոֆ.: 1997–2000-ին՝ համագործակցել է Ֆրանսիայի նախագահ Ժ. Շիրակի հետ: Հեղինակ է «Ինչպե՞ս կարելի է սիրել Ֆրանսիան» (1999), «Ֆրանսիան ինչպես է» (2000) գրքերի:

ՇԱԼՈՒՆ Ֆրանսուա Ալբեր (1885–1946), ֆրանս. դերասան: Ֆրանսիական կինոյի առաջին աստղերից: Ստեղծել է ռոմանտիկ հերոսի կերպարներ: Խաղացել է «Ռոբերտ Մակեր և Բերտրան» (1923), «Ռասպուտին և կայսրուհի» (1932), «Ռոդոգունա» (1936), «Ֆանֆան-Լալա» (1938), «Ռոդոգունա» (1946) ֆիլմերում:

ՇԱԼՈՒՆ Ֆեոդոր Իվանովիչ (1873–1938), ռուս. երգիչ (բաս): ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1918): Ռուս. վոկալ արվ-ի նշանավոր ներկայացուցիչ: 1899-ից՝ Մոսկվայի Մեծ թատրոնի, Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնի մենակատար (Բորիս՝ Մ. Պ. Մուսորգսկու «Բորիս Գոդունով», Մեֆիստոֆել՝ Շ. Գունոյի «Ֆաուստ» և Ա. Բոյտոյի «Մեֆիստոֆել», ևն): Համերգ. ծրագրում ընդգրկել է ռուս. ժող. երգեր, ռոմանսներ: 1982-ից Կազանում անցկացվում է Շ-ի անվ. օպեր. փառատոն (1991-ից՝ միջազգ.), 1989-ից՝ օպեր. երգիչների մրցույթ (1993-ից՝ միջազգ.):

ՇԱԼՆԻԿՈՎ Ալեքսանդր Իոսիֆովիչ (1905–1986), ռուս ֆիզիկոս-փորձարար: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1979): Աշխ-ները վերաբերում են ցածր ջերմաստիճանների ֆիզիկայի (գերհաղորդիչների միջանկյալ վիճակ, հեղուկ և պինդ հելիումի հատկություններ, քվանտ. բյուրեղներ, նուրբ մետաղե թաղանթներ, վակուումի հատկություններ ևն) նուրբ փորձարար. հետազոտություններին: Ստեղծել է յուրատիպ սարքեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1948, 1949, 1953, 1985):

ՇԱԼՈՏ (Allium ascalonicum), **աշկելոնյան սոխ**, սոխանմանների ընտանիքի (Alliaclae) սոխ ցեղի (Allium) բազմամյա խոտաբույս: Հայրենիքը Փոքր Ասիան է: Տարածված է նաև Այսրկովկասում: Մննդի մեջ օգտագործում են Շ-ի մատղաշ տերևները, նաև ուտելի փոքր սոխուկները: Դեղաբույս է:

ՇԱԼՋՅԱՆ Միհրան Միքայելի (1925–2004), գվարդիայի սերժանտ: ԽՄ հերոս (1945): Հերոսի կոչման արժանացել է 1945-ի ապրիլին Շպրեի գետանցման և Լյուբենվալդ ք-ի շրջանում մղված մարտերում ցուցաբերած խիզախության համար:

ՀՄՊ 1-ին, ԽՍՀՄ Փառքի 3-րդ աստիճանների, «Պատվո նշան» շքանշաններ:

ՇԱԽ (պարսկ. շահի (արքա, թագավոր) ռուս. տարբերակը՝ շախ) **շախմատում**, խաղաքարերով հարձակում մրցակցի արքայի վրա: Մի շարք անընդհատ իրար հաջորդող Շ-երի դեպքում, երբ արքան խուսափել չի կարողանում, ստեղծվում է «հավիտենական շախ» դրություն, որի դեպքում գրանցվում է ոչ-ոքի արդյունք:

ՇԱԽԼԻՆ Բորիս Անֆիյանովիչ (1932–2008), ուկրաինացի մարզիկ (սպորտ. մարմնամարզություն): ԽՍՀՄ ս. վ. վ. (1955): Օլիմպ. խաղերի 7-ակի (2 ոսկե մեդալ՝ 1956, 4՝ 1960, 1՝ 1964), աշխարհի (1954, 1958), Եվրոպայի (1955, 1963), ԽՍՀՄ բազմակի (1957–64) չեմպիոն՝ մարմնամարզ. բազմամարտում, առանձին վարժություններում և թիմ. մրցումներում:

ՇԱԽԿՅԱՆ Գառնիկ Սմբատի (ծ. 1937), ճարտ.: Շարտ-յան դ-ր (1992), պրոֆ. (1994): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2012): Հեղինակ է շենքերի, քաղաքաց. և հանգստյան տների նախագծերի, «Օձուն» (1983), «Լոռի. պատմության քարակերտ էջերը» (1986), «Սովետական Հայաստանի ճարտարապետական հուշարձանները» (1989), «Կայծոն–Շնող հայրենագիտարան» (1999), «Հայ ժողովրդի ճարտարապետական-շինարարական գործունեությունը VIII–IX դարերում» (2004) և այլ աշխ-ների, Հովհաննես Թումանյանի կյանքին և ստեղծագործությանը նվիրված գրքերի:

ՀՀ ԳԱԱ Թ. Թորամանյանի (2011), ՀԳՄ Հ. Թումանյանի (2016) անվ. մրց-ներ, Ֆրիտյոֆ Նանսենն հիմնադրամի (2008), ՀՀ ՄՆ (2012), Հակոբ Մեղապարտի (2010), ՀԳՄ «Գրական վաստակի համար» (2010) մեդալներ:

ՇԱԽԿՈՒԼՅԱՆ Ռաֆայել Հովհաննեսի (1928–1998), տնտեսագետ: ԵՊՀ պատվ. դ-ր (1996), պրոֆ. (1997): 1967–75-ին՝ Հայկ. հանրագիտարանի տնտեսագիտության խմբագրության վարիչ: «Էկոնոմիկա» ամսագրի գլխ. խմբ. (1981–98): Աշխ-ներ վերաբերում են պահանջմունքների, պահանջարկի ու առաջարկի, անցում. շրջանի տնտ. հարաբերությունների, շուկայական տնտեսագիտ-յան հարցերին:

ՇԱԽՄԱՏ (< *շահ* – արքա և մատ – մահացավ), **ճատրակ**, սեղանի խաղ 2 մրցակիցների միջև՝ 64 խաղադաշտերով խաղատախտակի վրա՝ 32 խաղաքարերով (16-ական սպիտակ ու սև): Շ-ի միջազգ. ֆեդերացիայում՝ ՖԻԴԵ-ում (FIDE, հիմն.՝ 1924, ընդգրկված է 169 երկիր, 2015), անցկացվում են տղամարդկանց (1886-ից), կանանց (1927-ից) աշխարհի անհատ. և թիմ. առաջնություններ, համաշխ. օլիմպիադաներ՝ տղամարդկանց (1927-ից) և կանանց (1957-ից):

Շ-ի հայրենիքը Հնդկաստանն է: Հին Հայաստանում Շ. անվանվել է ճատրակ, երբեմն՝ ճատրկուց: Հայաստանում Շ-ի տարածման մասին գրավոր վկայություններ կան *Մխիթար Անեցու* և *Վարդան Արևելցու* աշխ-ներում: Հայաստանի շախմատիստների միությունը հիմնադրվել է 1927-ին, անդրանիկ առաջնությունը կայացել է 1934-ին: Հայաստանի Շ-ի ֆեդերացիան կազմավորվել է 1959-ին, ՀՀ ՖԻԴԵ-ի անդամ է 1992-ից: 1996-ին Երևանում անցկացվել է 32-րդ համաշխ. օլիմպիադան, 2001-ին՝ աշխարհի 5-րդ թիմ. առաջնությունը, 2014-ին՝ Եվրոպայի անհատ. առաջնությունը: 1970-ից Երևանում գործում է շախմատի տուն (1984-ից՝ Տիգրան *Պետրոսյանի* անվ.): 1971-ին հիմնադրվել է Հենրի *Գասպարյանի* անվ. շախմատի մասնագիտացված դպրոցը, 2012-ին՝ Հայաստանի շախմատի ակադ-ը: ՀՀ միջնակարգ դպրոցներում Շ. 2013-ից ընդգրկված է ռուս. ծրագրերում:

«ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ», հանդես (1972–2015, Երևան): Հայաստանի շախմատի ֆեդերացիայի հրտ-յուն: Հիմնադիր-խմբ.՝ Գագիկ *Հովհաննիսյան*:

ՇԱԽՄԱՏՈՎ Ալեքսեյ Ալեքսանդրովիչ (1864–1920), ռուս. լեզվաբան, բանասեր, պատմաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1899): Գր. ռուս-ի, տեքստաբանության՝ որպես գիտ-յան, պատմ. ուսումնասիրության սկզբնավորողը: Հետազոտել է ռուս-ը, նրա խոսվածքները, ռուս և սլավոն. ժողդ-ների ծագման խնդիրները, նախահայրենիքին և նախալեզվին վերաբերող հարցեր: «Ռուսերենի բառարան» (1891–1916) ակադեմ. հրտ-յան խմբ.:

ՇԱԽՈՎՍԿՈՅ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (1777–1846), ռուս դրամատուրգ, թատեր. գործիչ, իշխան: ՌԳԱ (1810), Ս.

Պետերբուրգի ԳԱ պատվ. (1841) անդամ: Հեղինակ է «Դաս պչրուհիների համար կամ Լիպեցկի ջրերը» (1815) և այլ պիեսների, որոնք նպաստել են ռուս. ազգ. կատակերգության ձևավորմանը:

ՇԱԽՏԵՐ (մինչև 1920-ը՝ Ալեքսանդրովսկ-Գրուշևսկի), ք. ՌԴ Ռոստովի մարզում: Երկթող. կայարան է: Բն.՝ 237,2 հզ. (2015): Արդյունահանում են քարածուխ: Շ-ում է Էկոնոմիկայի և ծառայությունների հիմնարկությունների ռոստով. պետ. համալսարանը:

ՇԱԽՈՒՐԻՆ Ալեքսեյ Իվանովիչ (1904–1975), ռուս քաղ. և պետ. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1941): Ինժեներաավիացիոն ծառայության գնդ.-գնդ. (1944): 1940–46-ին՝ ԽՍՀՄ ավիաարդ-յան ժողկոմ: 1946–1953-ին անհիմն բռնադատվել է:

ՇԱԿԱՇԵՆ, Շիկչեն, Արշակաշեն, գվո Ուտիք նահանգ-ում՝ Կուր գետի միջին հոսանքի աջափնյա դաշտում: Գլխավոր *Արիշանը* նույնացնում է Գանձակի գվո-ին: Անտիկ հեղինակների երկերում հիշատակվում է «Սակասենե» անունով: V դ-ի 1-ին կեսին Սասանյան Իրանը Շ. նույնպես անջատել է Մեծ Հայքից և կցել Աղվանից մարզպանությանը:

ՇԱԿՈՒՐՈՎ Սերգեյ Կայումովիչ (ծ. 1942), ռուս. դերասան: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1991): 1978–87-ին՝ Մոսկվայի Կ. Ս. Ստանիսլավսկու անվ. դրամատիկ. թատրոնի, ապա՝ ՄՊՀԹ-ի դերասան (Իվանով՝ Ա. Պ. Չեխովի «Իվանովը և ուրիշները», 1993, ևն): Նկարահանվել է «Օտարների մեջ յուրային, յուրայինների մեջ՝ օտար», «Սիբիրիադա», «Փրկարարը», «Արմավիր», «Օ՜, երջանիկ» և այլ ֆիլմերում: ԽՍՀՄ Պետ. մրց. (1980):

ՇԱՀ (պարսկ. – տիրակալ, արքա), միապետի տիտղոս Մերձ. և Միջին Արևելքի մի շարք երկրներում և Հնդկաստանում (Դելիի սուլթանություն): Առաջին անգամ Շ. տիտղոսն օգտագործվել է Իրանում, Սասանյանների տիրապետության ժամանակ և պահպանվել է մինչև 1979-ի փետր-ը, երբ գահընկեց արվեց շահ Մ. *Ռեզա Փահլավին*:

ՇԱՀ ՋԱՀԱՆ («աշխարհի տիրակալ», 1592–1666), Մեծ Մողոլների կայսրության տիրակալը Հնդկաստանում՝ 1627–58-ին: Գահակալելով՝ հրամայել է սպանել իր բոլոր եղբայրներին և զարմիկներին՝ որպես գահի հավակնորդների: Նրա օրոք կառուցվել է *Թաջ Մահալը*: Գահընկեց է արել որդին՝ Աուրանգզեբը:

ՇԱՀԱԶԻԶ (Շահազիզյանց) Երվանդ Հովակիմի (1856–1951), գրականագետ, պատմաբան, ազգագրագետ, մանկավարժ: Բանասիր. գիտ. դ-ր (1944): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1946): Սմբատ *Շահազիզի* եղբորորդին: Հեղինակ է «Միքայէլ Ղազարեան Նալբանդեանց» (1897), «Մկրտիչ Յովսէփեան Էմին» (1900), «Պատմական պատկերներ» (1903), «Հին Երևանը» (1931, մշկ. հրտ.՝ 2003), «Սմբատ Շահազիզի կենսագրությունը» (1944) և այլ աշխ-ների, «Հիշողություններ և դիմաստվերներ» (հրտ.՝ 1980) գրքի: Կազմել է «Դիվան Միքայել Նալբանդյանի» (1932), «Դիվան Խաչատուր Աբովյանի» (հ. 1, 2, 1940, 1948) ժող-ները:

ՇԱՀԱԶԻԶ (Շահազիզյանց, Շահազիզյան) Սմբատ Տեր-Սիմոնի (1840–1907), բանաստեղծ, մանկավարժ, հրապարակախոս: Երվանդ *Շահազիզի* հորեղբայրը: Արլ. լեզուների գիտ. թեկնածու (1867): Հեղինակ է «Ազատութեան ժամեր» (1860), «Լևոնի վիշտը» (1865) պոեմների ու բանաստեղծությունների, «Ծիծաղի տոպրակ: Անեկդոտներ հայ եւ օտարների կեանքից» (1892) ժող-ների, «Հրապարակախօս ձայն» (1881), «Յիշողութիւններ Վարդանանց տօնի առիթով» (1901), «Մի քանի խօսք իմ ընթերցողներին» (1903) և այլ հրապարակախոս. գործերի: Շ-ի հայտնի «Երազ» բանաստեղծությունը վերածվել է երգի:

ՇԱՀԱԶԻԶՅԱՆ Արման Հրաչյայի (ծ. 1975), նավամոդելիստ: Միջազգ. կարգի ս. վ. (1999): Հրաչյա *Շահազիզյանի* որդին, Գայանե *Շահազիզյանի* եղբայրը: Աշխարհի (1991, 1996), ԽՍՀՄ (1989) չեմպիոն, Համաշխ. գավաթի խաղարկությունների (1997), «Տուր-Եվրոպա» մրցաշարի (1988), բազմաթիվ միջազգ. մրցումների հաղթող և մրցանակակիր, աշխարհի 6-ակի ռեկորդակիր:

ՇԱՀԱԶԻԶՅԱՆ Գայանե Հրաչյայի (ծ. 1978), նավամոդելիստուհի: Միջազգ. կարգի ս. վ. (1999): Հրաչյա *Շահազիզյանի* դուստրը, Արման *Շահազիզյանի* քույրը: Աշխարհի (1991, 1994, 1995), Եվրոպայի (2009) չեմպիոն, Համաշխ. գավաթի խաղարկությունների (2004), բազմաթիվ միջազգ. մրցումների և ԽՍՀՄ ժողդ-ների սպարտակիադայի հաղթող ու մրցանակակիր, աշխարհի ռեկորդակիր:

ՇԱՀԱԶԻԶՅԱՆ Հրաչյա Բարկենի (ծ. 1947), նավամոդելիստ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1969), ՀՀ վ. մ. (1987), ՀՀ ս. վ. վ. (1999): Տեխ. գիտ. թեկնածու (1982), դոցենտ (1986): Արման և Գայանե *Շահազիզյանների* հայրը: Աշխարհի (1985, 1987, 1989, 1991, 1994, 2002, 2003), ԽՍՀՄ (1978, 1986, 1988) չեմպիոն, «Տուր-Եվրոպա» մրցաշարերի (1982, 1986), Համաշխ. գավաթի խաղարկությունների (1998, 2000, 2004), միջազգ. բազմաթիվ մրցումների հաղթող, աշխարհի և ԽՍՀՄ բազմակի ռեկորդակիր:

ՇԱՀԱԿ Ա ՄԱՆԱՉԿԵՐՏՅԻ (ծ. թ. անհտ–377), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 373-ից՝ Աղբիանոսյանների (IV–V դդ.) տոհմից: Եղել է Մանազկերտի եպս.: Հայոց կաթողիկոսներից առաջինն էր, որի ձեռնադրման ծիս. արարողությունը *Պապ* թագավորի հրամանով կատարվել է ոչ թե Կեսարիայում, այլ Հայաստանում:

ՇԱՀԱՄԻՐՅԱՆ Շահամիր (1723–1797), ազգ.-ազատագր. շարժման գործիչ, հայ բուրժուալուսավոր. գաղափարախոսության հիմնադիրը: Մադրասում զբաղվել է դերձակությամբ, առևտրով, դարձել մեծահարուստ: Հեղինակ է Մադրասի հայերի ինքնավարության կանոնադրության՝ «Տետրակ որ կոչի նշաւակ» (1783): Վճռական դեր է խաղացել Մադրասի խմբակի ստեղծման գործում: Շ. Մադրասում հիմնադրել է հայկ. տպարան (1771), որտեղ հրատարակել է իր շարադրած «*Որոգայթ փառաց*»-ը: 1780-ական թթ-ին ռուս. արքունիք է ներկայացրել Հայաստանում ստեղծվելիք կարգերը (հանրապետ.) բնութագրող դաշնագրի նախագիծ:

ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ (Տեր-Հակոբյան Հակոբ, 1884–1983), հաս-քաղ. գործիչ, գրող: 1919-ին այցելել է Երևան: Եղել է Հայոց ցեղասպանության գլխ. հանցագործներին ահաբեկման հատուկ հանձնաժողովի անդամ, «*Նեմեսիս*» գործողության կազմակերպիչներից: Փարիզում հիմնադրել է «Արևմտահայ ազատագրական ուխտ» կազմ-յունը, խմբագրել «Ազատամարտ» (1928–29) անկախ շաբաթաթերթը, ապա վերադարձել է Բոստոն: Հեղինակ է «Թիւրքիզմը Անգօրայէն Բագու և թրքական օրիէնտասիօն» (1928, անգլ.՝ 2002), «Թուրքերը եւ մենք» (1928, ռուս.՝ 2007), «Ալեքսանդրապոլի դաշնագրէն. 1930-ի կովկասեան ապստամբութիւնները» (հ. 1–2, 1934–35), «Երևանի համաձայնագիրը» (1941), «Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկուայի, Կարսի). բաղդատական զուգակշիռ» (1957) և այլ աշխ-ների, բանաստեղծությունների ժող-ների:

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ (Քերեսթեճյան Շահնուր Զաքարի, 1903–1974), գրող: 1922-ից՝ Փարիզում: 1933-ից գրել է նաև ֆրանս.՝ Արմենն Լյուբեն կեղծանունով: Շ. Շ. «Նահանջը առանց երգի» (հրտ.՝ 1929) վեպում ներկայացրել է ազգապահպանության խնդիրներ, հայ մարդու այլասերումն ու ուծացումն օտար միջավայրում: Հեղինակ է «Յարալէզներուն դաւաճանութիւնը» (հրտ.՝ 1971) և այլ պատմվածքների ժող-ների, «Գիշերային փոխադրություն» (հետագայում՝ ֆրանս. արձակ գործերի ժող-ի խորագիրը, 1955, Ռիվարոյի մրց.՝ 1956) հուշագրության: Ֆրանս. լույս են տեսել «Անտեղի պրպտումներ» (1942), «Գաղտագողի անցորդ» (1946), «Սուրբ համբերություն» (1951), «Բարձրավանդակ» (1957), «Հուր ընդ հրո» (1968), հայ.՝ «Թերթթիս կիրակնօրեայ թիւը» (1958) պատմվածքների, «Զոյգ մը կարմիր տետրակներ» (1967) և «Կրակը կողքիս» (1973) հրապարակախոս. նյութերի ժող-ները, «Երկեր» (1962, գիրք 1, 2, 1982, 1985), «Բաց տոմարը» (1971), «Սիրտ սրտի» (1995), «Շուրջը՝ ոչինչ: Ամբողջական քերթուածներ» (2007) ժող-ները, «Նամականին» (2001):

ՇԱՀԱՊԻՎԱՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ 444, գումարվել է Շահապիվան ավանում (*Ծաղկոտն* գվո)՝ կաթողիկոս *Հովսեփ Ա Հողոցմեցու* նախաձեռնությամբ: Ընդունվել են ամուսնաբնտան. հարաբերությունների կարգավորման, հոգևորականների գործունեության հսկողության, *մծղնության* դեմ պայքարի ևնի մասին կանոններ: Հանցագործությունների համար սահմանել են պատիժներ, որով դրանք ստացել են դատաստանագրքի նշանակություն:

ՇԱՀԱՊՈՆՔ, լ-գագաթ ՀՀ Սյունիքի մարզի և Նախիջևանի ԻՀ սահմանին: Բարձր.՝ 3204 մ: Լանդշաֆտը՝ լ-մարգագետնային: Ստորոտին է VI դ-ում կառուցված համանուն բերդը:

ՇԱՀԱՐՄԵՆՆԵՐ, Շահ-ի Արմեններ, Իսլաթի ամիրության տիրակալների պայման. անվանումը՝ ըստ նրանց կրած «Շահ-Արմեն» («Հայոց թագավոր») տիտղոսի:

ՇԱՀԲԱԶԱՆ Անահիտ Ատոմի (ծ. 1929), վարակաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1975): Աշխ-ները վերաբերում են աղիք. վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ու բուժմանը: Առաջարկել է խոլերայի դեմ պայքարի նոր ախտահանող միջոց՝ նատրիումի մետասիլիկատը:

ՇԱՀԲԱԶԱՆ Արթուր Կոնստանտինի (ծ. 1941), կինոռեժ., սցենարիստ: Ստեղծել է շուրջ 60 վավերագր. կինոնկարներ («Հրազդանի ձորը», 1977, «Վահան Տերյան», 1978, «Հայաստանը սպասում է ձեզ», 1982, «Էկոլոգիան կրոն պետք է լինի», 1989, ևն): «Ձնծաղիկ» (1973), «Հեքիաթի տերը» (1985) և այլ ֆիլմերի սցենարիստն է:

ՇԱՀԲԱԶԱՆ Եվգենի Սերգեյի (1902–1966), սրտավիրաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (1939), պրոֆ. (1945): Աշխ-ները վերա-

բերում են սրտի արյան շրջանառության խանգարումների փորձարար. հետազոտություններին, սրտի ծանր ու բարդ հիվանդությունների և որովայնի օրգանների վիրահատ. բուժմանը:

ՇԱՀԲԱԶՅԱՆ Լևոն Կարապետի (1932–2005), շինարար-ինժեներ: ՀՀ վաստ. շինարար (1984): ՀՃԱ թղթ. անդամ (1992): ՌԴ պատվ. շինարար (2002): Երարդշին տրեստի կառավարիչ (1975–85), ՀԽՍՀ արդ. շին-յան նախարար (1988–91), Ակունքշին կազմ-յան հիմնադիր-ղեկ. (1991–2005): Հեղինակ. խմբի հետ 1980-ին նախագծել և իրագործել է ԵՕՌԹ-ի շենքի համալիր վերակառուցումը (ՀՀ Պետ. մրց.): ԵՊՀՀ ոսկե մեդալ (2002):

ՇԱՀԲԱԶՅԱՆ Կարեն Մերուժանի (ծ. 1946), ֆիզիկոս-տեսաբան: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1992), պրոֆ. (2001): Աշխ-ները վերաբերում են երկրաղադրիչ ֆերմի-հեդուկների գերհոսունությանը, գերխիտ երկն. մարմիններում մագնիս. դաշտերի առաջացմանը և մեկուսացված նեյտրոն. աստղերից ու սպիտակ թզուկներից գրավիտացիոն ալիքների ճառագայթմանը:

ՇԱՀԲԱԶՅԱՆ Կորյուն Խաչատուրի (1921–1991), մեքենաների և մեխանիզմների տեսության բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1966), պրոֆ. (1967): Աշխ-ները վերաբերում են տարած. փոխանցող լծակավոր (շուռտվիկաշարժաթևային և քառօղակ) մեխանիզմների նախագծման հարցերին:

ՇԱՀԲԱԶՅԱՆ Հայկ Խաչատուրի (1896–1982), հիգիենիստ: Բժշկ. գիտ. դ-ր (1949), պրոֆ. (1952): ԽՍՀՄ ԲԳԱ թղթ. անդամ (1957): Ուկր. ԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1966): Աշխ-ները վերաբերում են արտադր. միկրոկլիմայի և արտաքին միջավայրի տարբեր ազդակների հիգիենային նորմավորման սկզբունքներին, աշխ-ի ֆիզիոլոգիային, գաղտ. թունաբանությանը, սիրտանոթ. համակարգի հիվանդություններին, վնասվածքների հիգիենային:

ՇԱՀԲԱԶՅԱՆ Ռոմեն Լիպարիտի (ծ. 1938), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1986), պրոֆ. (1987): 2004-ից՝ ԱՄՆ-ում: Ապացուցել է լայն դասի էլիպսային կեղծ դիֆերենցիալ օպերատորների տեսության եզրային խնդիրների միարժեք լուծելիության թեորեմներ: Հետազոտել է կառուցման խնդիրներ՝ մասնական ածանցյալներով նկարագրվող դիֆերենցիալ հավասարումների լայն դասերի համար, ապացուցել ճշգրիտ կառավարման գոյության թեորեմներ:

ՇԱՀԲԱԶՅԱՆ Ստեփան Կարապետի (1883–1923), հեղ-կուս. գործիչ: Պլովդիվում խմբագրել է «Կարմիր լուրեր» (1920) և «Նոր աշխարհ» (1922) սփյուռքահայ 1-ին կոմ. թերթերը: Բուլղարիայի կոմ. տեսնյակ սոցիալիստների կուս-յան մյուս ղեկ-ների հետ գլխավորել է երկրում հաստատված ֆաշիստ. վարչակարգի դեմ 1923-ի հունիս-յան և սեպտ. ապստամբությունները, որի պարտությունից հետո գնդակահարվել է: Գնդակահարման վայրում կանգնեցված է Շ-ի հուշարձանը: Պլովդիվի հրապարակներից մեկը կոչվել է նրա անունով:

ՇԱՀԲԱԶՅԱՆ Սուրեն Վարդգեսի (1923–1989), կինոօպերատոր, կինոռեժ.: Ուկր. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1986): 1951-ից՝ Կիևի կինոստուդիայի օպերատոր («Անդրիշ», 1954, «Հետադարձ ճանապարհ չկա», 1970, «Ապագային մոտենալը», 1986, նաև ռեժ-ը, «Երևակայական պատմություն», 1988, չորսն էլ՝ Կիևի կինոստուդիա, «Երեք հաստլիկները», 1966, Լենֆիլմ, «Նռան գույնը», 1969, Հայֆիլմ) ևն:

ՇԱՀԲՈՒՀ, գետ Հայկ. լ-աշխարհում, Արլ. Տիգրիսի (Ջերմ) վերին հոսանքի ձախակողմյան վտակը: Երկ.՝ մոտ 40 *կմ*: Սկիզբ է առնում Կորդվաց լ-ների հվ-արմ. լանջից: Մտումը խառն է, հորդանում է մայիսին:

ՇԱՀԳԱԼԴՅԱՆ Արտեմի Գրիգորի (1910–1985), ջութակահար, դիրիժոր: Կաբարդինա-Բալկար. ԻԽՍՀ ժող. արտիստ (1964): 1947–67-ին՝ Նալչիկի ֆիլհարմոնիայի սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր, 1967–70-ին՝ երաժշտ. թատրոնի գլխ. դիրիժոր: 1942–47-ին՝ ԵԵԿԹ թատրոնի ջութակահար-կոնցերտմայստեր, ապա՝ դիրիժոր: Հեղինակ է 40-ից ավելի երաժշտ. գործերի (հիմնականում՝ երգեր):

ՇԱՀԳԱԼԴՅԱՆ Կարեն (ծ. 1976), ջութակահար: Արամ Խաչատրյանի անվ. եռյակի հիմնադիր-անդամներից (1999): 1998–2002-ին հանդես է եկել «Մոսկվայի վիրտուոզներ» (ղեկ.՝ Վ. Ֆ. *Սպիվակով*), 2003–05-ին՝ տարբեր նվագախմբերում (Ստրադիվարիուսի ջութակով): 1997-ին՝ «Դավիդ Օյստրախ», «Յուրի Յանկելևիչ», «Մստիսլավ Ռոստրոպովիչ» (միջազգ.) հիմնադրամների կրթաթոշակառու: Պ. Սարասատեի անվ. միջազգ. մրցույթի դափնեկիր (1999, Իսպանիա):

ՇԱՀԳԻԼԴՅԱՆ Իոսիֆ Վահանի (ծ. 1932), համաճարակաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1981), պրոֆ. (1988): ՌԲԳԱ թղթ. անդամ (2005): ՌԴ գիտ. վաստ. գործիչ (1988): Վահան *Շահգիլդյանի* եղբայրը: Աշխ-ները վերաբերում են վիրուս. լյարդաբորբերի տարբեր տեսակների համաճարակաբանությանը, B և C լյարդաբորբերի հարուցիչների փոխանցման բնական ուղիների ակտիվության առանձնահատկություններին, A և B լյարդաբորբերի դեմ վակցինացման արդյունավետությանը ևն: ՌԲՆԳԱ անդամ (1991):

ՇԱՀԳԻԼԴՅԱՆ Վահան Վահանի (1935–2012), հեռուստահաղորդակցության և տեղեկատվության բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1970), պրոֆ. (1971): ՀՀ ԳԱ արտ. (2005), ՌԳԱ թղթ. (2006) անդամ: Իոսիֆ *Շահգիլդյանի* եղբայրը: 1987-ից՝ Մոսկվայի կապի և տեղեկատվության տեխ. համալսարանի ռեկտոր (2005-ից՝ կառավարման խորհրդի նախագահ): Աշխ-ները վերաբերում են համաժամանակացման բարդ համակարգերի, տեղեկույթի ընդունման և մշակման հարցերին: Մեծ ավանդ ունի կապի կիրառ. ուղղությունների՝ ուժեղարարների ու ռադիոհաղորդիչ սարքերի, շարժ. կապի համակարգերի զարգացման գործում:

ԽՍՀՄ (1926), ՌԴ (2000) Պետ. և Կառ-յան (2001) մրց-ներ, ՌԴ Պատվո (2002), Բարեկամության (1995), Փառքի (2005) շքանշաններ, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալ (2011), Ամերիկ. ռադիոճարտարագետների միության բարձրագույն պարգև (2005), ՀՀ ԳԱԱ ոսկե մեդալ:

ՇԱՀԴԱՂ, լ-գագաթ Մեծ Կովկասի համակարգում՝ Ադրբեջանում: Բարձր.՝ 4243 *մ*: Կան սառցադաշտեր:

ՇԱՀԴԱՂԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, ՀՀ արլ-ում՝ Սևանա լճի արլ. ափին: Տես *Սևանի լեռնաշղթա*:

ՇԱՀԴԱՐԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Արմ. Պամիրում՝ Տաջիկստանում: Կազմված է 2 լ-գագաթից՝ Իշկաշիմյան (առլգն բարձր.՝ 6096 *մ*, Մայակովսկու պիկ) և բուն Շ. լ-ից (բարձր.՝ 6726 *մ*): Կան սառցադաշտեր (ընդհ. տարածքը՝ 270 *կմ*²):

ՇԱՀԵՆ, XII դ-ի ճարտ.: «Բռի եղցի» վայրում (այժմ՝ ԼՂՀ Մարտունու շրջանում) կառուցել է նույնանուն հուշարձանախմբի միանավ թաղակապ եկեղեցին (1195-ից առաջ):

ՇԱՀԵՆ (Սարգսյան Շահեն Եղիազարի, 1909–1990), գուսան: ՀԽՍՀ ժող. արտիստ (1967): «Շահենի քնար», «Երևան», «Շիրակ» անսամբլների ղեկ.: Հեղինակ է 300-ից ավելի քնար. երգերի («Սասնա ծռեր», «Թուխ մազերուդ», «Նաիրյան դալար բարդի», «Անցա, գնացի» ևն), «Էլինար» պոեմի, «Հերիքնազ» երաժշտ. պատկերի, «Սասնա Դավթի ու Սնրա Մելիքի մենամարտը» դյուցազներգության ևն:

ՇԱՀԵՆ Սեդրակ (Շահինյան Սեդրակ Գրիգորի, 1887–1975), գրող, հաս. գործիչ: ԵՀՊ-ի տարիներին՝ «Երիտասարդ Հայաստան» (Նյու Յորք) թերթի խմբ.: Հեղինակ է «Տանջուածները» (1917), «Կարկառուն կամարներ» (1917), «Քսան կախաղաններ» (1918), «Զէյթուն» (1920), «Թալաաթի անկումը» (1928) դրամանեքի, «Սասունք» (մաս 1, 1919), «Կիլիկիոյ ձախողանքը. պատասխանատու դերակատարները եւ մեղսակիցները» (1921) պատմագիտ. և ազգագր. երկերի: Գրաւել է «Սասնա ծռեր» էպոսի «Քար Թորոսը» (1967), «Սասունին» (1968) պատումները:

ՇԱՀԵՐ, XIII դ-ի ճարտ.: Անունը պահպանվել է Անիում Ն. Մառի 1892-ի պեղումներով բացված «Բախտաղեկի» եկեղեցու շին. արձանագրության մեջ՝ «թվ. ՉԻ» (1271) թվագրումով:

ՇԱՀԻ, 1. պարսկ. հին մանրադրամ: 2. Այսրկովկասը Ռուս. կայսրությանը միացվելուց հետո տեղացիները «Շ.» են անվանել ռուս. 5-կոպեկանոցը:

ՇԱՀԻԴ (արաբ. – հանուն հավատի ինքնազոհաբերվող), նահատակ մահմեդականության մեջ, որը պատրաստ է զոհաբերվել հանուն հավատի, որպեսզի անպայմանորեն հայտնվի դրախտում: «Շ.» հաս. կացություն հաճախ ոչ իրավացիորեն օգտագործում են ահաբեկչ. գործողությունները, այդ թվում՝ մահապարտ ահաբեկիչներին արդարացնելու և քարոզելու նպատակով:

ՇԱՀԻ-ՋԻՆԴԱ, ճարտ. հուշարձան Սամարղանդում, պաշտամունք. հուշակոթողների համալիր (հիմնականում՝ XIV–XV դդ.)՝ բազմագույն խեցե զարդերով: Ընդգրկում է Կուսամա իբն Աբբասի մազար սրբատեղին, Շադի Մուլքի, Հաջի Ահմադի, Կազի զադե Ռումիի դամբարանները, Թուման Աքայի համալիրը: Ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում:

ՇԱՀԻԿՅԱՆ Ալեքսանդրու Մելքոնի (1901–1965), ռումինագիր գրող, հրապարակագիր: Յոն *Շահիկյանի* եղբայրը: 12 տարի գլխավորել է «Ռևյու Ռումենե» ֆրանս. հանդեսը: Հեղինակ է «Հանքագործների գործադուլը» (1929), «Գրիվիցա» (1933) և այլ պոեմների, նաև «Մինչև տասը եկ հաշվենք» (1953, հայ.՝ 1959) մանկ., «Կապույտ թռչուն» (1961) բանաստեղծությունների, «Դանուբյան պատմվածքներ» (1959) ժող-ների:

ՇԱՀԻԿՅԱՆ Յոն Մելքոնի (1897–1964), ռեժ.: Ալեքսանդրու *Շահիկյանի* եղբայրը: Ռումինիայի արվ. վաստ. գործիչ (1953): Պրոֆ. (1952): 1944–52-ին՝ Բուխարեստի Ազգ., 1952-ից՝ Կ. Նոտարայի անվ.

թատրոնների գլխ. ռեժ. (Վ. Շեքսպիրի «Օթելլո», «Ռիչարդ III», Ֆ. Շիլլերի «Ավազակներ», Ն. Յորգայի «Խեղճ ծերունին և դոժը», Բ. Շոուի «Պիգմալիոն», Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», ևն):

ՇԱՀԻՆ Էդգար Պետրոսի (1874–1947), նկարիչ: 1896–ից գեղանկարչ. գործերով («Մուրացկանը», 1896, «Շնչահեղձը», 1898, ևն) մասնակցել է «սալոններին»: Ճանաչվել է փորագրություններով («Աղբահաններ», 1900, «Լաթահավաք կինը», 1901, «Լուիզ Ֆրանս», 1903, «Գործազուրկը», 1903, «Ընկած ձին», 1910, «Կուլլոնի արբայարանը», 1915, «Ի՞նչ գեղեցիկ հայկական քիթ», 1921, ևն): Զևավորել է նաև գրքեր (Ա. Ֆրանսի «Կատակերգական պատմություն», 1904, Գ. Ֆլոբերի «Նոյեմբեր», 1927, ևն):

Միջազգ. ցուցահանդեսի Ոսկե մեդալ (1900, Փարիզ), Ոսկե մեծ մրց. (1903, Վենետիկ), Ֆրանսիայի Պատվո լեգեոնի ասպետի աստիճան և շքանշան:

ՇԱՀԻՆ (Chahine) Յուսեֆ (1926–2008), եգիպտացի կինոռեժ.: Նկարահանել է «Դժոխքի երկինքը» (1954), «Ջամիլյա» (1959), «Երկիր» (1969), «Մարդիկ Նեղոսի վրա» (1970), «Ճնճղուկ» (1971), «Անառակ որդու վերադարձը» (1976), «Հիշողություն» (1982), «Քաոս» (2007) և այլ ֆիլմեր:

ՇԱՀԻՆՅԱՆ Ազատ Նիկոլայի (1928–2002), արձակագիր, դրամատուրգ: Հեղինակ է «Ճմեռային գիշերվա երազը» (1955), «Սուրի և Սամի արկածները» (1959), «Թատրոնը սառույցի վրա» (1962), «Երկնագույն և կարմիր երազներ» (1984) և այլ պատմվածքների ու վիպակների, «Տրամվայը պարկ է գնում» (1981) պիեսների ժող-ների:

ՇԱՀԻՆՅԱՆ Արամ Արտաշեսի (ծ. 1938), ֆիզիկոս, ֆիզքիմիկոս: Քիմ. (1982) և ֆիզ-մաթ. (1992) գիտ-ների դ-ր, պրոֆ. (1990): ՀՀ ԳԱԱ ակադ. (2010, թղթ. անդամ՝ 2000-ից): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2009): Արտաշես *Շահինյանի* որդին: 1992–99-ին՝ ՀՀ ԿԳ փոխնախարար: ՀՀ ԳԱԱ (2008–11), քիմ. և երկրի մասին գիտ-յունների բաժանմունքի (2007–11) ակադ. քարտուղար: 2011-ից՝ ՀՀ ԳԱԱ գիտակրթ. միջազգ. կենտրոնի գիտ. ղեկ.: Աշխ-ները վերաբերում են հեղուկ բյուրեղների, ՄԱՆ-երի միցելների և կենսբ. թաղանթների կառուցվածք. անցումների ու նրանց ֆունկցիոնալ հատկությունների փոխադարձ կապին: Ամերիկ. լուսակենսբ. (1989) և քիմ. (2005) գիտ. ընկ-ների անդամ:

ՇԱՀԻՆՅԱՆ Արշամ Արտաշեսի (1918–2004), քանդ.: ՀՀ վաստ. նկարիչ (1972), պրոֆ. (1990): Հեղինակ է մոնումենտալ բոլորաքանդակների՝ Թորոս Ռոսլինի արձանի (1967, Մոնդ-ի առջև), Տ. Չուխաճյանի (1971, ԵՕՖԹ-ի ճեմասրահում), Րաֆֆու (1988, Երևանի Րաֆֆու անվ. դպրոցի առջև) կիսանդրիների, Վ. Տերյանի կիսանդրու (1965, Երևան) և հուշարձանի (1974, Օրենբուրգ), հաստոց. քանդակների՝ «Մտորումներ» (1952), «Ծովակալ Իսակով» (1970) ևն:

ՇԱՀԻՆՅԱՆ Արտաշես Լիպարիտի (1908–1978), մաթեմատիկոս: Հայկ. մաթ. գիտ. դպրոցի հիմնադիրը: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1944), պրոֆ. (1944): ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1947, թղթ. անդամ՝ 1945-ից): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): Արամ *Շահինյանի* հայրը: 1945–55-ին՝ ՀԽՍՀ ԳԱ մաթ-ի և մեխանիկայի բաժանմունքի, 1955–59-ին՝ համանուն ինստ-ի հիմնադիր-տնօրեն, 1950–53-ին, միաժամանակ՝ ՀԽՍՀ ԳԱ ֆիզմաթ. գիտ-յունների բաժանմունքի ակադ. քարտուղար: Շ-ի աշխ-ներով Հայաստանում սկզբնավորվել են մաթ-ի բնագավառի համակարգված գիտ. հետազոտությունները: Աշխ-ները վերաբերում են կոմպլեքս տիրույթում մոտավորությունների տեսությանը, կոմպլեքս և իրական փոփոխականների ֆունկցիաների տեսության մի շարք նոր ուղղությունների: Ֆունկցիաների տեսության բնագավառում Շ-ի ներդրումները միջազգ. ճանաչում են ստացել: Շ-ի անունով է կոչվել ԵՊՀ-ին կից իր նախաձեռնությամբ ստեղծված ֆիզմաթ. թեքումով գիշերօթիկ դպրոցը (1978–ից):

ՇԱՀԻՆՅԱՆ Գագիկ Միհրանի (ծ. 1952), նկարիչ: Հեղինակ է բնանկարների («Բնանկար», 1988, «Տեսարան Բլուր թաղամասից», 2002, ևն), նատյուրմորտների («Ժամացույցով նատյուրմորտ», 1991, «Նատյուրմորտ», 1999): Զևավորել է գրքեր:

ՇԱՀԻՆՅԱՆ Գուրգեն Թադևոսի (1894–1982), շինարար: ՀԽՍՀ վաստ. շինարար (1967): Գյումրու «Հոկտեմբեր» կինոթատրոնի, գլխ. հյուրանոցի և այլ կառույցների գլխ. ճարտարագետ: ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան (1967):

ՇԱՀԻՆՅԱՆ Հրանտ Համազասպի (1923–1996), մարմնամարզիկ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1951), ՀԽՍՀ ֆիզկուլտուրայի և ս. վ. գ. (1966): ՖԿՀՊԻ պատվ. պրոֆ. (1985): Առանձին վարժությունների ԽՍՀՄ առաջնությունների 7-ակի հաղթող (1948–49, 1951–52, 1954–55), Հելսինկիի օլիմպ. խաղերի (1952), աշխարհի (1954), ԽՍՀՄ բացարձակ (1952) չեմպիոն: ՄՕԿ-ի «Արդարացի խաղ» մրց. (1994): Շ-ի անունով են կոչվել ՖԿՀՊԻ մարմնամարզության ամբիոնը և իր հիմնադրած մարզադպրոցը:

ՇԱՀԻՆՅԱՆ Մարիետա Սերգեյի (1888–1982), ռուսագիր գրող, հրապարակախոս, հաս. գործիչ: Բանասիր. գիտ. դ-ր (1946): ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1950): Սոց. աշխ. հերոս (1976): Հակոբ Խաչատրյանցի կինը: Հեղինակ է «Orientalia» (1913) բանաստեղծությունների, «Մեսս-Մենդ» (կինոնկար՝ 1926, հայ.՝ 1971) վիպակների, «Ճանապարհորդություն Սովետական Հայաստանում» (1950, հայ.՝ 1952) և այլ ակնարկների ժող-ների, «Սովետական Հայաստան» (1923) գրքի, «Հիդրոցենտրալ» (1930–31, հայ.՝ 1932) վեպի, նաև գրականագիտ. աշխ-ների և այլ գործերի: Կատարել է նաև թարգմ-յուններ:

ԽՍՀՄ Պետ. (1951), Լենինյան (1972) մրց-ներ, ՀԽՍՀ (1932) և ԽՍՀՄ (1939, 1958) Աշխ. կարմիր դրոշի, «Պատվո նշան» (1943), Կարմիր աստղի (1945), Հոկտ. հեղ-յան (1962, 1971), Լենինի (1962, 1976), Ժողդ-ների բարեկամության (1978) շքանշաններ:

ՇԱՀԻՆՅԱՆ Սոֆյա Վաղինակի (1915–2003), օդերևութաբան, Հայաստանում ջրաօդերևութաբան. ծառայության հիմնադիրներից: Շ-ի ղեկավարությամբ ստեղծվել է ավելի քան 100 կայանով ջրաօդերևութաբան. համակարգ, կազմվել են ջրաօդերևութաբան. տեղեկատուներ, սխեմաներ, քարտեզներ: 1986-ին Շ-ի նախաձեռնությամբ ստեղծվել է Այսրկովկաս. ջրաօդերևութաբան. ԳՀԻ Երևանի բաժանմունքը:

ՇԱՀԻՆՅԱՆ Սուրեն Գուրգենի (1926–2005), շինարար: Տեխ. գիտ. թեկնածու (1965), պրոֆ. (1991): 1979–92-ին՝ Շին-յան և ճարտ-յան ԳՀԻ տնօրեն, 1992-ից՝ «Շինինդուստրիա» գիտատեխ. կենտրոնի գլխ. տնօրեն: Աշխ-ները վերաբերում են երկրաշարժակայուն շին-յան, շենքերի և սեյսմիկ ազդեցությունների մոդելավորման, ստորգետնյա պայթեցումների եղանակով երկրաշարժերի ազդեցության հարցերին: ՀՀ շինարարների գիտատեխ. ընկ-յան նախագահ (1980–ից), ՀՃԱ փոխնախագահ (1993–ից), ՄՃԱ (1999) անդամ:

ՇԱՀԻՋԱՆՈՎ Եվգենի Սմբատի (ծ. 1933), ռազմ. տեխնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1982), պրոֆ. (1985): 1981–87-ին՝ Մոսկվայի Կրասնոարմեյսկի մեքենայացման ԳՀԻ, 1987-ից՝ «Ռեգիոն» պետ. գիտ. արտադր. ձեռն-յան գլխ. տնօրեն: Աշխ-ները վերաբերում են ՌԾՈՒ և ծով. ավիացիայի համար բարձր ճշգրտությամբ կառավարվող հակասուզանավ. զենքի յուրատիպ տեսակների և ավիացիոն ռումբերի նախագծման ու ստեղծման խնդիրներին: ՌԴ Հրթիռ. և հրետան. գիտ-յունների, տեղեկագիտ. միջազգ. ակադ-ների անդամ (1993):

Լենինյան մրց. (1978), ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (1971), Հոկտ. հեղ-յան շքանշաններ:

ՇԱՀԻՐ ԽԱՉԱՏՈՒՐ, **Դերբենդցի** (Շահնազարյան, 1846–1890-ական թթ.), աշուղ: Հորինել է սոցիալ-քաղ., բարոյախրատ. («Խաչատուրն եմ արծաթատեաց»), սիրային թեմաներով երգեր: Հրատարակվել է Շ. Խ-ի «Ծաղիկ ժամանակի երգերը» (1889, Թիֆլիս) ժող-ը:

ՇԱՀԻՐՅԱՆ Էվելինա Վանիկի (ծ. 1941), դերասանուհի: ՀՀ վաստ. արտիստ (2003): 1969-ից՝ ԵԴԹ դերասանուհի (Վարդուկ՝ Ե. Օտյանի «Սեր և ծիծաղ», Էլեոնորա՝ Ի. Ժամյակի «Մայո Ամիլկար», ևն): Մասնակցել է հեռուստաներկայացումների (Ու. Գիբսոնի «Երկուսը ճոճանակի վրա» ևն), նկարահանվել կինոյում («Կարինե», 1967, «Կտոր մը երկինք», 1980, ևն, երկուսն էլ՝ Հայֆիլմ):

ՀԹԳՄ «Արտավազդ» մրց. (2011), ՀՀ ՄՆ ոսկե (2011), ՀՀ «Սիվսես Խորենացի» (2014) մեդալներ, ՀՀ ՄՆ «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալ (2016):

ՇԱՀԼԱՄՅԱՆ Ներսես Գերասիմի (1860–1904), երգիչ (տենոր): 1880-ից՝ իր հիմնադրած կանանց երգչախմբի ղեկ., 1892–93-ին՝ Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնի մեներգիչ: Մասնակցել է նաև Մոսկվայի և Թիֆլիսի օպեր. ներկայացումներին:

ՇԱՀԼԱՄՈՎ Վլադիմիր Արկադիի (1923–2005), հյուսվածքաբան: Բժշկ. գիտ. դ-ր, պրոֆ.: ՌԲԳԱ թղթ. անդամ (1988): ՌԴ գիտ. վաստ. գործիչ: Բջիջների ախտաբանության ուլտրակառուցվածք. հիմունքների հետազոտությունների հիմնադիրը ԽՍՀՄ-ում: Իր մշակած մոլ. մանրադիտման եղանակով ուսումնասիրել է մոլ-ների տեղագրությունը և որոշել բջիջների վնասվածքների յուրահատկությունները: Մոսկվայի բջջաբանների գիտ. ընկ-յան նախագահ: Վ. Պ. Վորոբյովի անվ. մրց. (1971):

ՇԱՀԽԱԹՈՒՆԻ Արշավիր Վաղարշակի (1885–1957), դերասան: Վաղարշակ *Շահխաթունյանի* որդին: Խաղացել է Թիֆլիսի հայոց դրամատիկ. ընկ-յան (1908–09), ապա՝ Բաքվի մշակութ. միության թատերախմբերում (Սեյրան՝ Շիրվանզադեի «Նամուս», Արեղա՝ Լ. Շանթի «Հին աստվածներ», ևն): 1913–14-ին նկարահանվել է Ա. Խանժոնկովի կինոֆիրմայում («Բելա», «Խանդ», «Փոթորիկ» ևն), ապա՝ ֆրանս.

կինոյում: Նկարահանել է «Անդրանիկ» ֆիլմը (1920-ական թթ., գլխ. դերում՝ Շ.):

ՇԱՀԽԱԹՈՒՆԻ Ելիզավետա Ավետի (1911–2011), ճարտարագետ-ավիակոնստրուկտոր: Օ. Կ. ***Անտոնովի*** կինը: Մասնակցել է Յակ-7, -9, ԱՆ-12, -14, -22, -24, -26, -28, -32, ԱՆՀ-30 և այլ ինքնաթիռների ստեղծմանը: Աշխ-ները վերաբերում են տուրբոպտուտակ. շարժիչներով ինքնաթիռների կայունության հաշվարկին:

Լենինյան մրց. (1962):

ՇԱՀԽԱԹՈՒՆՅԱՆ Հովհաննես Գևորգի (1799–1849), պատմաբան, ինագետ, մատենագետ: Սբ Էջմիածնի միաբան, Սինոդի անդամ (1837), եպս. (1841): 1834–35-ին՝ Երևանի վիճակի (թեմ) առաջնորդ: Կազմել է Սբ Էջմիածնի մտնդ-ի ձեռագրացուցակը (312 անուն): Գրել է Դավիթ–Դանիելյան անցքերի պատմությունը ևն: 1843-ին Շ. նշանակվել է Վիրահայոց թեմի նվիրակ:

ՇԱՀԽԱԹՈՒՆՅԱՆ Վաղարշակ Հովհաննեսի (1843–1892), թատեր. գործիչ, դերասան: Արշավիր ***Շահխաթունու*** հայրը: 1865–67-ին Ալեքսանդրապոլում ղեկավարել է սեփ. (Ս. Մելիք-Հայկազյանի հետ) թատերախումբը, 1868-ին կազմակերպել է Վաղարշապատի թատրոնը: Դերերից են՝ Արշակ Բ (Գալֆայանի «Արշակ Բ»), Սամվել, Արտաշես (Ս. Հեքիմյանի «Սամվել», «Արտաշես և Սաթենիկ») ևն:

ՇԱՀԿԵՐՏԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ 1750, Շահկերտ ավանի (***Երնջակ*** գվթ) բնակիչների պայքարը Նախիջևանի խան Հեյդարկուլիի զորքի դեմ: Հայերի դիմադրությունը ղեկավարել է Հովհաննես Խանդամիրյանը: Հեյդարկուլի խանն ստիպված դիմել է բանակցությունների և հաշտություն կնքել նրա հետ, սակայն վերջինիս սպանվելուց հետո խանը կրկին հալածանք է սկսել հայերի դեմ, որոնց զգալի մասը տեղափոխվել է Կապան, հետագայում՝ Շուշի:

ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆ Արմենակ Սարգսի (1878–1939), երգիչ (տենոր): 1902–04-ին սովորել է Վ. ***Էնդիի*** «Scola Cantorum» մասնավոր վարժարանում: 1910-ին հրավիրվել է Փարիզի «Գրանդ օպերա» (Ֆաուստ՝ Շ. Գունոյի «Ֆաուստ», 1911): Կատարել է Կոմիտասի մշակած երգերը (նրա նվագակցությամբ), որոնք ձայնագրվել են (1914): Հայտնի է «Տարոնի սոխակ» անունով: Համերգ. երկացանկում՝ հայկ. ժող., ազգ-հայրենասիր. և հոգևոր երգեր:

ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆ Սամվել Սարգսի (1955–1992), հաս-քաղ. գործիչ, գրող, լրագրող: 1992-ին՝ ՀՀ ԳԽ լրատվության հանձնաժողովի քարտուղար: «Արծիվ-մահապարտներ» գումարտակի կազմում մասնակցել է Մարտակերտի շրջանի բնակավայրերի ազատագր. մարտերին, որտեղ և զոհվել է:

ՀԼԿԵՄ (1989), ԹՄՄ (1992) և ՀԺՄ «Ոսկե գրիչ» (1996, հետմահու) մրց-ներ, ՀՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի մեդալ (1996, հետմահու):

ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆ Վարոս Աշոտի (1940–1977), նկարիչ: Հեղինակ է նատյուրմորտների, դիմանկարների, թեմատիկ հորինվածքների, գրաֆիկ. թերթերի: Գործերից են՝ «Պատուհան» (1970–76, շարք), «Կեսօր» (1972), «Ձոն» (1975), «Ալբատրոս» (1976): Ստեղծել է նաև հորինվածքներ՝ արծնապատման տեխնիկայով («Նկարչուհու մոտ», 1974):

ՇԱՀՄՈՒՐԱԴՈՎ Յուրի Ավանեսի (ծ. 1942), ըմբիշ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1970), վ. մ. (1973): Դաղստանի Հանրապետության մշակույթի վաստ. գործիչ (1968), վ. մ. (1973): Մանկավարժ. գիտ. թեկնածու (1968): Աշխարհի (1970), Եվրոպայի (1966, 1967, 1969), ԽՍՀՄ (1967–70, 1972) չեմպիոն: 1978–81-ին՝ ազատ ոճի ըմբշամարտի ԽՍՀՄ հավաքականի գլխ. մարզիչ:

ՇԱՀՆԱԲԱԹՅԱՆ Անժելա Թադևոսի (1925–2008), պարուհի: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1959): 1941–78-ին՝ Հայկ. ժող. երգի-պարի անսամբլի, Հայֆիլհարմոնիայի առաջատար մենապարուհի («Ուզունդարա», «Նազելի», «Նազպար», «Նաիրի» ևն):

Երիտասարդության և ուսանողների համաշխ. VI փառատոնի դափնեկիր (1957, Մոսկվա):

ՇԱՀՆԱԶԱՐ (Շահնազարյան) Գիվի Հակոբի (ծ. 1933), թարգմանիչ: 1983–89-ին՝ Թբիլիսիի հայկ. դրամատիկ. թատրոնի տնօրեն: Վրաց. է թարգմանել Նահապետ Քուչակի հայրենները (1973), Պ. Սևակի «Եղիցի լույս» (1979) ժող-ը, Մ. Նալբանդյանի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի, Հ. Շիրազի և ուր. գործերից:

ՎԽՍՀ Մաչաբելու անվ. Պետ. գր. մրց. (1989), ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2011), Վրաստանի «Պատվո նշան» շքանշան:

ՇԱՀՆԱԶԱՐ ՈՒՍՏԱ, XVII դ-ի ճարտ.: 1661-ին նորոգել է ***Խորակերտի վանքի*** եկեղեցին՝ Պարոն Շահնազարի, նրա կնոջ՝ Ռուսուդանի, և որդու՝ Կորկիի միջոցներով (պահպանվել է արձանագրությունը՝ շենքի հս. պատին):

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Արշակ Գաբրիելի (1872–1942), գրող: Հեղինակ է «Խաւար աշխարհում» (1909), «Գյուղական պատկերներ» (1933), «Արևի ճամբին» (1939) և այլ պատմվածքների ժող-ների, «Հարամ-կաթնակեր աղջիկը» (1926) կենցաղ. թեմայով պոեմի:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Բորիս (Բալաբեկ) Հարությունի (ծ. 1939), տնտեսագետ-կիբեռնետիկ: Տնտեսագիտ. դ-ր (1989), պրոֆ. (1990): ՀԳԳԱ թղթ. անդամ (1994): Աշխ-ները վերաբերում են ջր. ու հող. պաշարների, ոռոգման և արտադր. համակարգերի լավարկային օգտագործման խնդիրներին, դրանց լուծման ալգորիթմների մշակմանն ու իրականացմանն ԷՀՄ-ով: Եղել է «Գարդման» հայրենակց. միության նախագահ (1995–2007):

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Գևորգ Մեխակի (1927–1987), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դ-ր (1981): Աշխ-ները վերաբերում են երկհալոիդ վինիլային միացությունների գերթթուներով օքսիդացման և եռհալոիդ մեթիլկարբինոլների դեհիդրման ժամանակ տեղի ունեցող մոլ. վերախմբավորումների իր հայտնաբերած օրինաչափություններին: Սինթեզել է D-լյուցիֆերին և W-ամինոալկիլիզոլյումինոզներ, որոնք օգտակար են կենսաօրգ. քիմիայում իմուն. վերլուծության համար:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ (Մելիք-Շահնազարյան) Թամար Կոստանդինի (1901–1978), երգչուհի (մեցցո-սոպրանո), մանկավարժ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1961): Պրոֆ. (1961): 1932–48-ին՝ ԵՕՔԹ մեներգչուհի [Ավմաստի (Ա. Սպենդիարյանի «Ավմաստ») դերերգի առաջին կատարողը, 1933]:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ (Շահնազարյանց) Կարապետ (1814–1865), մշակույթի, ազգեկեղեց. գործիչ, վրդ.: 1855-ին Փարիզում հիմնադրել է տպարան, «Շար հայ պատմագրաց» մատենաշարով հրատարակել Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի, Մովսես Կաղանկատվացու, Ստեփանոս Օրբելյանի և այլ հեղինակների երկեր: Ֆրանս. է թարգմանել (1856) Ղևոնդի «Պատմութիւնը»: 1862-ի Զեյթունի ապստամբության օրերին հուշագիր է ներկայացրել ***Նապոլեոն III***-ին՝ նրա ուշադրությունը հրավիրելով Կիլիկիայի հայերի վիճակի վրա: Հեղինակ է «Դաշանց թղթոյ քննութիւնն ու հերքումը» (1862), «Ուսումն քրիստոսական հաւատոյ…» (1869) և այլ աշխ-ների (հայ., ֆրանս.):

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Նիկոլայ Սարգսի (ծ. 1946), բանաստեղծ, թարգմանիչ, մանկավարժ: Հեղինակ է «Հավատիս գույները» (1995), «Ես լեռներից սովորեցի» (2003), «Լեռան հաց» (2006), «Զայներ» (2013) և այլ բանաստեղծությունների ժող-ների:

ՀԳՄ «Գրական վաստակի համար» (2016), ՀՀ ԿԳՆ ոսկե (2016) մեդալներ:

ՇԱՀՆԱԶԱՐՈՎ Գևորգի Խոսրովի (1924–2001), իրավաբան, հաս-քաղ. գործիչ: Իրավաբ. գիտ. դ-ր (1963): ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1987): Կարեն ***Շահնազարովի*** հայրը: 1988-ին նշանակվել է ԽՄԿԿ ԿԿ գլխ. քարտուղարի, 1990-ին՝ ԽՍՀՄ նախագահի խորհրդական: Աշխ-ները վերաբերում են սոց. համակարգի, պետ. շին-յան խնդիրներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1980):

ՇԱՀՆԱԶԱՐՈՎ Ժորժ Սամսոնի (1909–1969), ռազմ. տեխնիկայի բնագավառի գիտնական: Աշխ-ները վերաբերում են հրետան. սարքաշինության խնդիրներին, ՀՕՊ-ի միջոցների կառավարման ինքնաշխատ համակարգերի և ապարատների մշակման ու ստեղծման հարցերին:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1969), ԽՍՀՄ Կարմիր դրոշի շքանշան (1949):

ՇԱՀՆԱԶԱՐՈՎ Կարեն Գևորգիի (ծ. 1952), կինոռեժ.: ՌԴ արվ. վաստ. գործիչ (1997): ՌԴ ժող. արտիստ (2002): Գևորգի ***Շահնազարովի*** որդին: 1973-ից՝ Մոսֆիլմի ռեժ., 1998-ից՝ Մոսֆիլմ կինոկոնցեռնի նախագահ: Նկարահանել է «Մենք ջազից ենք» (1983), «Զերո քաղաքը» (1989), «Արքայասպանը» (1991), «Լիալուսնի օրը» (1998), «Մահ անունով ձիավորը» (2004), «Սպիտակ վագր» (2012) և այլ կինոնկարներ:

Միջազգ. կփ-երի արծաթե (1984, Լեհաստան, 1989, Իսպանիա) մեդալներ, Հատուկ (1984, Ֆրանսիա), Գլխ. (1989, Չիկագո, ԱՄՆ), Գլխ. (1991, Հարավսլավիա), ՌԴ «Նիկե» (1998), Բ. Պոլևոյի (1982), Վասիլև եղբայրների անվ. (1988), ՌԴ Պետ. (2002, 2003) մրց-ներ, ՀՀ «Պատվո շքանշան» (2013) ևն:

«ՇԱՀՆԱՄԵ» («Գիրք թագավորաց»), իրան. ժողդ-ների առասպել. ու վիպ. զրույցների և պատմ. ժամանակագրությունների ժող-ներ: Առավել հայտնի է ***Ֆիրդուսու*** բանաստեղծ. դյուցազներգությունը: Մնացած ժող-ներից պահպանվել են պատառիկներ: Կազմել են III–VI դդ-ում (միջին պարսկ.), VIII–IX դդ-ում թարգմանել են արաբ.: Իրան. առասպել. ու վիպ. զրույցների որոշ արձագանքներ գրառվել են հայ մատենագրության վաղ հուշարձաններում: Հայ գրկ-յան մեջ չափածո «Շ.»-ի մասին առաջին անգամ հիշատակել է Կոստանդին Երզնկացին: XVIII դ-ից սկսած՝ Ֆիրդուսու «Շ.»-ի մասին հիշատակություններ կան հայ արևելագիտ. ու գեղ. գրկ-յան մեջ:

ՇԱՀՆՇԱՀ, **արքայից արքա**, Իրանի տիրակալների տիտղոս: Օգտագործվել է Սասանյանների կառավարման ժամանակաշրջանից:

ՇԱՀՊԱԶ Ստեփան Մանուկի (1900–1994), գրող, բանասեր: 1926-ից՝ Ալեքսանդրիայում: Հեղինակ է «Վարագոյրին ետևը» (1946), «Օրերուն հետ» (1970) վեպերի, «Մենք հայերս» (1959), «Գրիգոր Զոհրապ» (1959), «Եգիպտոսի հայերը» (ֆրանս., 1966) աշխ-ների, «Տողանցք» (1967) երգիծ. ժող-ի, «Մեր երկիրը» (1971, հայաստանյան տպավորություններ) գրքի:

ՇԱՀՊԱԶ ՎԱՐԴԱՆ (Տոնիկյան Մինաս, 1864–1959), ազգ-ազատագր. շարժման գործիչ, ֆիդայի: Մասնակցել է «Բանկ Օտոմանի» միջադեպին (Կ. Պոլիս, 1896-ի օգոստ. 14): 1902-ին մեկնել է Վան և գործակցել *Իշխանի*, Ռ. Տեր-Մինասյանի և այլոց հետ: 1913–14-ին գործել է *Կայծակ Առաքելի*, 1915–16-ին՝ *Մուրադ Սեբաստացու* հետ: Ռուս. Կովկասյան ռազմաճակատի քայքայումից (1918) հետո հաստատվել է Կովկասում, իսկ Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ Բեյրութում:

ՇԱՀ-ՊԱՌՈՆ (Շահ-Պարոնյան) Օլիմպիադա Իվանի (Հովհաննեսի, 1922–2009), դերասանուհի: ԲԽՍՀ վաստ. արտիստ (1955): 1947-ից՝ Մինսկի Մ. Գորկու անվ. դրամատիկ. թատրոնի դերասանուհի (Ռեգդեմոնա, Ռեգան՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», «Լիր արքա», Տոնյա՝ Լ. Մալյուգինի «Հին ընկերներ», Կլեոպատրա, Մելանյա՝ Մ. Գորկու «Թշվառներ», «Եգոր Բուլչովը և ուրիշները», բարոնուհի Շտրալ՝ Մ. Յ. Լերմոնտովի «Դիմակահանդես», ևն): ԲԽՍՀ «Պատվո նշան» շքանշան (1955):

ՇԱՀՊԱՐՈՆՅԱՆ Վարդան Գասպարի (գր. ծածկանունը՝ Շահ-Պարոն, 1872–1941), հաս-քաղ. գործիչ, խմբ., գրող: 1913–16-ին՝ *«Ջավախք»* պարբ-ի հիմնադիր-խմբ., 1917-ին՝ Կովկասի հայոց բարեգործ. ընկ-յան Ախալքալաքի մասնաճյուղի նախագահ: Հեղինակ է «Անտօն Սիմոնիչ» (1905), «Արմէն ու Ֆաթման» (1909), «Աշխէն» (1909), «Արցունքի ծով» (1912), «Գող՝ սիրտը դող» (1912) դրամաների:

ՇԱՀՊԱՐՈՆՈՎ (Շահպարոնյան) Միքայել Հովհաննեսի (1918–2001), ֆիզքիմիկոս, փիլ.: Քիմ. գիտ. դ-ր (1952), պրոֆ. (1959): ՌԽՍՖՀ գիտ. վաստ. գործիչ (1980): Աշխ-ները վերաբերում են անհավասարակշիռ թերմոդինամիկայի, քիմ. կինետիկայի, լույսի ցրման տեսության, նյութի հետ ձայնի և ռադիոալիքների փոխազդեցության ու բնագիտ-յան փիլ. հարցերին:

ՇԱՀՊՐԱԿ (Matthiola), կաղամբազգիների ընտանիքի միամյա կամ բազմամյա խոտաբույսերի և կիսաթփերի ցեղ: Հայտնի են 55 տեսակ, ՀՀ-ում՝ 1 (հոտավետ Շ.)՝ Կոտայքի, Վայոց ձորի մարզերում, Երևանի շրջակայքում: Գեղազարդիչ է:

ՇԱՀՋԱՀԱՆՊՈՒՐ, ք. Հնդկաստանի Ուտտար Պրադեշ նահ-ում: Բն.՝ 378 հզ. (2011): Գղտ. շրջանի առևտրաարդ. կենտրոնն է:

ՇԱՀՈՒԽ (1377–1447), *Լանկ Թամուրի* որդին, 1397-ից՝ Խորասանի, ապա նաև Թեմուրյանների պետության տիրակալ՝ 1409-ից:

ՇԱՀՍԵՅ-ՎԱԽՍԵՅ, *Ալի* խալիֆի որդու՝ *Հուսեյնի* հիշատակության նվիրված [սգանվել է Քերբալայի ճակատամարտում (680)] օրը շիաների տոնացույցում: Անվանումը՝ մասնակիցների «Շահ Հուսեյն, վախ Հուսեյն» ձայնարկություններից: Մուհարրամի 1-ին տասնօրյակում սգո արարողակարգերը ներառում են միստերիաներ, ուղեկցվում են առավել մոլեռանդների ինքնախարազանումներով:

ՇԱՀՍՈՒՎԱՐՅԱՆ Մարինե Լևոնի (ծ. 1966), ակնաբան, վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (2004): Աշխ-ները վերաբերում են առաջնային գլաուկոմայի, ցանցենու անոթ. հիվանդությունների ախտորոշմանն ու բուժմանը, ցանցենու երակների խցանման ռիսկի գործոնների հայտնաբերմանը, դեղորայք. բուժմանն ու կանխարգելմանը:

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ Ալեքսանդր Իսահակի (1903–1954), երաժշտագետ-պատմաբան: Ռուբեն *Շահվերդյանի* եղբայրը: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1945): 1945-ին Շ-ի խմբագրությամբ առաջին անգամ բեմադրվել է Տ. Չուխաճյանի «Արշակ Բ» օպերան: Հեղինակ է «Հայ երաժշտության պատմության ակնարկներ. XIX–XX դդ.» (1959), «Կոմիտասը և հայ երաժշտական մշակույթը» (ռուս., 1971) և այլ աշխ-ների:

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ Գայանե Միքայելի (ծ. 1954), հոգեբան: Հոգեբ. գիտ. դ-ր (1999), պրոֆ. (2001): Աշխ-ները վերաբերում են սոցիալ., բժշկ. հոգեբ-յանը, հոգեթերապիային:

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ Դանիել (Դանուշ) Ալեքսանդրի (1882–1941), կուս. և պետ. գործիչ: 1921-ին ու 1924–28-ին եղել է ՀԽՍՀ և ԱԽՖՍՀ առևտր. ներկայացուցիչը Թուրքիայում, միաժամանակ, 1922–23-ին՝ ՀԽՍՀ արդարադատության ժողկոմ, ժողկոմխորհի նախագահի տեղակալ: 1928–29-ին՝ ՀԽՍՀ Կարմիր խաչի ներկայացուցիչ Անգլիայում, Գերմանիայում և Բելգիայում: 1928-ից աշխատել է ԽՍՀՄ արտաքին առևտրի ժողկոմատում:

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ Ռուբեն Իսահակի (1900–1976), նկարիչ, խեցեգործ: ՀԽՍՀ ժող. նկարիչ (1967): Ալեքսանդր *Շահվերդյանի* եղբայրը: Հեղինակ է գեղանկարչ. («Սաքսոնյան ճենապակի», 1925, «Վենետիկ», 1926, «Արագած», 1950, «Հավլաբար», 1967, ևն), խեցեղեն («Հեծյալը», 1965, «Կինտո», 1968, «Ոսկեվազգի աղջիկը», 1975, ևն) գործերի:

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ Վահե (Ֆլորեր) Սուրենի (ծ. 1945), ռեժ.: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1989): ՀՀ ժող. արտիստ (2001): Պրոֆ. (2003): 1973–96-ին և 2000-ից՝ Վանանձորի թատրոնի գեղ. ղեկ., 1994–2000-ին՝ ԵԹԿՊՀ ռեկտոր, 1996-ից, միաժամանակ՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի տնօրեն և գեղ. ղեկ. (Մ. Մետեղինկի «Կապույտ թռչուն», 1980, Ա. Պ. Չեխովի «Երեք քույր», 1987, Ռ. Հակոբջանյանի «Նոյի ժառանգները», 1991, Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», 1993, Գարսիա Լորկայի «Բեռնարդա Ալբայի տունը», 2001, Շիրվանզադեի «Պատվի համար», 2006, ևն):

«Վահազն» համահայկ. (2003), ՀԹԳՄ «Արտավազդ» (2006) մրց-ներ, ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշան (2017), ՀՀ «Մովսես Խորենացի» (1996), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի (2016) մեդալներ, ՀՀ ԿԳՆ (2005), ՄՆ (2006), ԵՊՀ (2006) ոսկե մեդալներ:

ՇԱՀՎԵՐԴՈՎ (Շահվերդյան) Ալեքսանդր Եգորի (1878–1937), կուս. և պետ. գործիչ: 1921-ին հրավիրվել է ՀԽՍՀ և նշանակվել բանգյուղտեսչության, ապա՝ արդարադատության ժողկոմ: 1923-ից՝ Անդրֆեդերացիայի Կենտգործկոմի քարտուղար:

ՇԱՀՎԵՐԴՈՎ Գրիգոր Գրիգորի (1886–1977), մանկավարժ: Պրոֆ. (1924): Կիրգիզ. ԽՍՀ (1944) և ՌԽՖՍՀ (1958) գիտ. վաստ. գործիչ: 1930–77-ին՝ Ս. Պետերբուրգի ֆիզ. կուլտուրայի ինստ-ի պրոռեկտոր:

ՇԱՀՎԵՐԴՈՎԱ Սուսաննա Նիկիտայի (1888–մ. թ. անհտ), կուս-պետ. աշխատող, մանկավարժ: ՀԽՍՀ վաստ. գործիչ (1947): 1925–29-ին՝ ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի բաժնի վարիչ, 1930–34-ին՝ ԱԽՖՍՀ բանգյուղտեսչության ժողկոմի տեղակալ (1931-ին՝ ժողկոմ), 1934–37-ին՝ ՀԽՍՀ լուսժողկոմի տեղակալ:

Լենինի (2), ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի, Հոկտ. հեղ-յան շքանշաններ:

ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ Միքայել Անդրանիկի (ծ. 1952), արտակարգ իրավիճակների բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1993), պրոֆ. (1997): ՌԴ ԶՈՒ գեն-մայոր (2002): ՌԴ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (2002): 2002-ից՝ ՌԴ գիտ-յան և բարձր տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են երկրաշարժագիտ-յանը, երկրաշարժերի կանխատեսմանը, դրանց հետևանքների վերացմանը, նաև արտակարգ իրավիճակների կառավարմանը: ՌԽՆԳԱ անդամ (2000):

ՌԴ Կառ-յան մրց. (1998, 2001), ՌԴԱ Պ. Լ. Կապիցայի անվ. արծաթե մեդալ (2002):

ՇԱՀՐԻԿՆԵՐ (Sylviidae), ճնճղուկանմանների կարգի թռչունների ընտանիք: Երկ.՝ 10–25 *սմ*: Հայտնի է մոտ 400 տեսակ, ՀՀ-ում հանդիպում են եղեգնաթռչնակները, ճռիկահավերը, մորեհավերը, գեղգեղիկները, արքայիկները ևն: 4 տեսակ և 6 ենթատեսակ գրանցված են ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ, ուղղակի հարկ, որը գանձվում է կազմ-յունների (ձեռն-ների, բանկերի, ապահովագր. ընկ-ների ևն) հարկվող *շահույթից* (համախառն եկամտի և սահմանված նվազեցումների տարբերությունից): Շ-ի գումարը ՀՀ-ում հաշվարկվում է հարկվող շահույթի 20 % դրույքաչափով:

ՇԱՀՈՒՄՅԱՆ Գրիգոր Հարությունի (1905–1973), ճարտարագետ-մեխանիկոս: Տեխ. գիտ. դ-ր (1943), պրոֆ. (1943): Վահրամ և Վաղինակ *Շահումյանների* եղբայրը: Նախագծել է նոր հաստոցներ, սարքավորումներ, բազմօղակ լծակավոր համակարգերը փոխարինել է գնդիկավոր փոխանցման մեխանիզմներով և դրանցով ստեղծել շրջատաշիչ հաստոցների նոր կոնստրուկցիաներ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1948):

ՇԱՀՈՒՄՅԱՆ Իվան (Հովհաննես) Կոստանդինի (1910–1996), փոխգնդ.: ԽՄ հերոս (1943): Գղտ. գիտ. թեկնածու (1950): ՀՄՊ-ում եղել է քիմ. պաշտպ-յան ջոկատի հրամ.: Հերոսի կոչման արժանացել է 1943-ի հոկտ. 15-ին՝ Դնեպրի գետանցման ժամանակ ռազմ. գործողությունները հմտորեն ղեկավարելու համար:

ՇԱՀՈՒՄՅԱՆ Լորինա Վահրամի (ծ. 1935), ճարտարագետ-երկրաբան: Երկրբ-հնքբ. գիտ. դ-ր (1984): Աշխ-ները վերաբերում են լ-զանգվածների և մետաղ. օգտ. հանածոների ճարտարագիտ. երկրբ-յանը:

ՇԱՀՈՒՄՅԱՆ Լևոն Ստեփանի (1904–1971), պատմաբան, հրապարակախոս, խմբ.: Պատմ. գիտ. թեկնածու: Ստեփան *Շահումյանի* որդին, Սերգեյ և Սուրեն

Շահումյանների եղբայրը: 1932–46-ին՝ մի շարք թերթերի խմբ., 1949–71-ին՝ Խորհրդ. մեծ հանրագիտարանի գլխ. խմբ-ի տեղակալ: Աջակցել է Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրության կազմավորմանը: Հեղինակ է Այսրկովկասում հեղ. շարժման, Բաքվի կոմունայի պատմությանը նվիրված աշխ-ների:

ՇԱՀՈՒՄՅԱՆ Հաղթանակ Շմավոնի (ծ. 1944), նկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (2010): 1977–89-ին՝ Երևանի գլխ. նկարիչ: Հեղինակ է «Հումանիտար օգնություն» (1988), «Երեք գեղեցկուհի» (1995), Դանտեին նվիրված (2000) շարքերի, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» մոտիվներով (2000) շարքի, «Հանդիպում անցյալի, ներկայի և գալիքի հետ» (2001), «Հայաստան» (2011) և այլ գործերի, որոնց բնորոշ են ֆիգուրատիվ մտածողությունը, իրականության խորհրդապաշտ. ընկալումները:

ՇԱՀՈՒՄՅԱՆ Սերգեյ Ստեփանի (1914–1977), պատմաբան: Պրոֆ. (1964): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1974): Ստեփան *Շահումյանի* որդին, Լևոն և Սուրեն *Շահումյանների* եղբայրը: 1951-ից՝ ԽՄԿԿ ԿԿ-ին կից ՄԼԻ գիտաշխատող: Ղեկավարել է ՄՊՀ-ին առընթեր հաս. գիտ-յունների գծով դասախոսների որակավորման բարձրացման ինստ-ի ասպիրանտուրան:

ՇԱՀՈՒՄՅԱՆ Ստեփան Գևորգի (1878–1918), հաս-քաղ. գործիչ, հրապարակախոս, քաղաքագետ: Լևոնն, Սերգեյ և Սուրեն *Շահումյանների* հայրը: Մասնակցել է ռուս. երեք հեղ-յուններին, ընտրվել է բոլշևիկյան կուս-յան ղեկ. մարմինների անդամ: 1917-ի հոկտ. հեղ-յունից հետո՝ Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար: Մասնակցել է «Թուրքահայաստանի մասին» դեկրետի մշակմանը: 1918-ի մարտին Շ-ի ղեկավարությամբ Բաքվում ճնշվել է մուսավաթականների խռովությունը. քաղաքում հաստատվել է խորհրդ. իշխանություն՝ Կոմունա: Շ. ընտրվել է Բաքվի ժողկոմխորհի նախագահ և արտաքին գործերի ժողկոմ: Վեց ամիս անց Կոմունան տապալվել է, ղեկ-ները (կոմիսարներ, նաև Շ.) գնդակահարվել են:

ՇԱՀՈՒՄՅԱՆ Ստեփանոս Վրթանեսի (1702–1782), ազգ-ազատագր. շարժման գործիչ: 1772-ի վերջին *Դավիթ Բեկի* և նրա զորախմբի հետ ժամանել է Սյունիք: Եղել է զորապետի օգնական, ապա՝ զորապետ, մասնակցել ազատագր. մարտերին: 1730-ին մեկնել է Իտալիա, մտերմացել *Մխիթար Սեբաստացու* և Մխիթարյան միաբանների հետ, պատմել Կապանի իրադարձությունների մասին, որոնք 1736–37-ին գրի է առել հայր Ղուկաս Սեբաստացի Ստեփանոսյանը. առաջին անգամ հրատարակվել է 1871-ին՝ «Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին...» վերնագրով:

ՇԱՀՈՒՄՅԱՆ Սուրեն Ստեփանի (1902–1936), խորհրդ. կուս., ռազմ. գործիչ: Ստեփան *Շահումյանի* որդին, Լևոն և Սերգեյ *Շահումյանների* եղբայրը: 1927-ին՝ Օրյոլի զրահատանկ. դպրոցի, ապա՝ Բելոռուս., 1932-ից՝ Լենինգրադյան ռազմ. օկրուգների զրահատանկ. զորքերի պետ: Պահպանվել են Շ-ի «Ստեփան Շահումյան» և «Բաքվի կոմունան» (ռուս., 1927) ձեռագիր աշխ-ները:

ՇԱՀՈՒՄՅԱՆ Վահրամ Հարությունի (1906–1963), հիդրոտեխնիկայի և ոռոգման բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1949), պրոֆ. (1949): Գրիգոր և Վաղինակ *Շահումյանների* եղբայրը: Մասնակցել է Ամուդարյա գետի ստորին հոսանքի և Սարդարապատի դաշտի ոռոգման համակարգերի, Արաքսի պոմպակայանների, Ռուբլևյան պատվարի (Մոսկվա գետի վրա) շին-յանը: Ստեղծել է անպատվար ջրընդունիչ հանգույց:

ՇԱՀՈՒՄՅԱՆ Վաղինակ Հարությունի (1899–1966), անասնաբույծ-ընտրաներումնաբան: Գղտ. գիտ. դ-ր (1949), պրոֆ. (1949): ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1962): Գրիգոր և Վահրամ *Շահումյանների* եղբայրը: Կոստրոմայի գղտ-յան ինստ-ի հիմնադիր-տնօրեն (1949): Աշխ-ները վերաբերում են գղտ. կենդանիների ընտրասերման, խեկ-ների բուծման հարցերին: Կոստրոմայի տավարի ցեղի հեղինակներից է: ԽՍՀՄ Պետ. մրց., Լենինի, Աշխ. կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքանշաններ, ԺՏՆՑ Մեծ ոսկե մեդալ:

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆ, վտմ ԼՂՀ հսարմ-ում: Կազմավորվել է 1991-ին՝ ԼՂԻՄ-ի համանուն շրջանի հիմքի վրա: 1993-ին ազատագրված Քարվաճառի և Շահումյանի (բռնազավթած) շրջանների հիմքի վրա կազմավորվել է նոր Շ. շ.: Վարչ. կենտրոնը՝ *Քարվաճառ* (1998-ից): Տարածքը՝ 2527,8 *կմ*², որից 698-ը՝ բռնազավթած: Ունի 16 համայնք՝ 1-ը՝ քաղաք., 15-ը՝ գյուղ.: Բն.՝ 2,8 հգ. (2010): Արմ-ում սահմանակից է ՀՀ Գեղարքունիքի, հվ-արմ-ում՝ Վայոց ձորի մարզերին, հվ-ում՝ ԼՂՀ Քաշաթաղի, արլ-ում՝ Մարտակերտի շրջաններին, հս-ում՝ Ադրբեջանին: Կան ոսկու, բազմամետաղների հանքեր, քաղցրահամ ջրեր, ջերմուկներ (հայտնի է Արմաջուր գ-ի հանք. ջուրը): Տնտ-յան հիմն. ճյուղն անասնապահությունն է: Ավտոճանապարհներով կապված է Վարդենիսի (ՀՀ) և Մարտակերտի շրջանների հետ:

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՄԿՈՒ-ԲԱՋՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ, ՀՀ Սյունիքի մարզում՝ Կապանի պղնձի հանքավայրի հվ-արլ. մասում: Լայնորեն տարածված քվարցային անդեզիդների հանքպարփակող ապարներ են: Հանքանյութը կազմում են հիմնականում ոսկին, արծաթը, ցինկը, սակավ՝ պղինձը, կապարը և ուղեկից տարրերը: Պաշարները. հանքանյութ՝ 3385 հգ. *տ*, ոսկի՝ 13,909 *տ*, արծաթ՝ 231,7 *տ*:

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՋՐԱՆՑՔ (մինչև 1924-ը՝ Սմոի ջրանցք), Երևանում: Սկիզբ է առնում Հրազդանի ձախ ափից, հոսում Քանաքեռի սարավանդի լանջերով, հասնում Վարդավառի լիճ: Կառուցվել է 1036-ին, վերակառուցվել 1925-ին: Երկ.՝ 8 *կմ*, ջրի ծախսը՝ 0,6 *մ*³/*վ*: Ոռոգում է Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի հողատարածքները:

ՇԱՀՈՒՄՅԻՅԱՆ Սուրեն Բարկենի (ծ. 1928), ստորջրյա զենքի և զինամթերքի արտադր-յան կազմակերպիչ: ՌԽՖՍՀ վաստ. մեքենաշինարար (1983): Դաղստանի վաստ. տնտեսագետ (1973): 1973–96-ին՝ Դաղստանի «Դաղդիզել» գործարանի (ք. Կասպիյսկ) տնօրեն: Ղեկավարել է ստորջրյա զենքի ու զինամթերքի, թևավոր հրթիռների, էլ. ինքնաշարժ ջրականների, ջրաձայն. խանգարիչ սարքերի արտադր-յան, դիզել. սարքերի փորձարարահետազոտ. աշխ-ների:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1986), Աշխ. կարմիր դրոշի, «Պատվո նշան», Հոկտ. հեղ-յան շքանշաններ:

ՇԱՀՈՒՆԵՑԻՆԵՐ, հայ իշխան. տոհմ: XIII–XIV դդ-ում տիրույթը *Վայոց ձոր* գվռ-ի Երերան կամ Հերհեր իշխանանիստ ավանը և նրա շրջակայքն էին: Եղել են *Օրբելյանների* վասալը, վարել նրանց սպարապետության գործակալությունը: Շ-ից նշանավոր է Վասակ իշխանի և Սամքայի որդի Վահրամը, որի օրոք (1283–1310) կառուցվել են Հերհերի Սբ Սիոն մենաստանին կից Սբ Աստվածածին (1283) և Սբ Գևորգ (1297) եկեղեցիները, Սբ Գրիգոր Լուսավորիչ (1296) մատուռը ևն: Տոհմի վերացումից հետո կալվածքներն անցել են Օրբելյաններին:


ՇԱՂԱԳՈՄՔ, **Շաղազոմ**, գվռ *Բարձր Հայք* նհնգ-ում՝ Եփրատի վտակ Սարաչամայի վերին հոսանքում: Մովսես Խորենացու վկայությամբ՝ Մեսրոպ Մաշտոցն իր աշակերտների առաջին խմբին ուսուցանել է այնտեղ: Ղազար Փարպեցին Շ. հիշատակում է Վահանանց պատերազմի (481–484) առնչությամբ:

ՇԱՂԱԽԻ ԲԱՐԲԱՌ, հայ-ի «ս» ճյուղի բարբառ: Խոսվել է Շաղախի և Քեյվանի շրջանների Սըղըն, Բարդ, Ղասաբ, Խուդափերին և այլ գ-երում: Ունի երկաստիճան ձայնեղազուրկ (պ–փ) բաղաձայն. համակարգ:

ՇԱՂԱՓԱՅԻՆ ՀԱՍՏՈՑ, նախատեսված է մետաղե և այլ նյութերի նախապատրաստվածքների վրա շաղափով անցքեր բացելու և դրանք մշակելու համար: Շ. հ-ով կատարում են շաղափում, անցքա- և եզրալայնում, անցքակոկում, ներտաշում, պարուրակահանում ևն: Լինում են ուղղաձիգ, շառավղ., կենտրոնահանող, բազմաիլ, ագրեգատ. և հատուկ:

ՇԱՂԱՓԻ ՄԵԼԱՎ, ՀՀ Արարատի մարզում, Վեդիի ձախ վտակը: Սկիզբ է առնում Դահնակի լ-շղթայից: Երկ.՝ 19,5 *կմ*, ավազանը՝ 131 *կմ*²: Սելավները կրկնվում են 4–5 տարին մեկ: Ավերիչ էին 1953, 1959, 1963, 1965-ի սելավները:

ՇԱՂԱՓԻՉ, անցքեր շաղափելու, եզրալայնելու գործիք: Առավել տարածված է պարուրաձև Շ.: Այն կտրող եզրերով ձող է (նկ.): Տաշեղների հեռացման համար աշխ. մասի վրա ունի 2 պարուրաձև առվակներ: Կտրող մասը պատրաստում են գործիք. պողպատից, կարծր համաձուլվածքից:



Պարուրաձև շաղափիչ

ՇԱՂԱՓՈՂ ՍՊՈՒՆԳՆԵՐ, կլիոններ, 4-ճառագայթանի սպունգների կարգի ընտանիք: Կրային հիմնանյութում բացում են մոտ 1 *մմ* տրամագծով անցքեր: Հայտնի է 20 տեսակ՝ տաք և բարեխառն ծովերի (այդ թվում՝ Սև, Սպիտակ, Բարենցի, Ճապոն.) ծանծաղուտներում: Շաղափելով ոստրեների խեցին՝ ոչնչացնում են նրանց:

ՇԱՂԳԱՄ կերային (Brassicarapa), կաղամբազգիների ընտանիքի *կաղամբ* ցեղի երկամյա բույս: Կերային մշակաբույս է և տարածված է բոլոր երկրագործ. շրջաններում: Արմատապտուղների 100 *կգ* պարունակում է մոտ 9 կերային միավոր և 0,7 *կգ* մարսելի պրոտեին:

ՇԱՂԿԱՊ, սպասարկու և չթեքվող խոսքի մաս. շաղկապում է համադաս բառեր կամ համադաս և ստորադաս նախադասություններ: Տարբերում են համադաս. (օր.՝ և, ու, իսկ, բայց, այսինքն ևն) և ստորադաս. (օր.՝ որ, թե, եթե, որպեսզի, որովհետև ևն) Շ–ներ:

ՇԱՂԿԱՊԵՆԱԲՈՐԲ, *կոնյունկտիվիտ* (ուշ. լատ.՝ conjunctivus – միացնող, շաղկապող), աչքի շարակց. թաղանթի բորբոքում: Հիմն. պատճառներն են վարակները, քիմ. և ֆիզ. (օր.՝ փոշի) գրգռիչները: Ախտանշանները՝ աչքի կարմրություն և ծակոցներ, լորձային կամ լորձաթարախ. արտադր–յուն, արցունաքահոսություն, լուսավախություն:

ՇԱՂԿԱՊԵՆԻ, *կոնյունկտիվա*, աչքի շարակցահյուսվածք. թափանցիկ թաղանթ: Ծածկում է կոպերի հետին մակերևույթը և աչքի առաջային մասը՝ մինչև եղջրաթաղանթը:

ՇԱՂՈՅԱՆ Լևոն (1887–1933), ազգ–ազատագր. շարժման գործիչ: 1915–ի մարտ–մայիս ամիսներին մասնակցել է Շատախի և նրա գյուղերի ինքնապաշտպ. մարտերին: 1918–ին Կոստի *Համբարձումյանի* հետ կազմակերպել է հայերի հարկադր. գաղթը Վանից դեպի Համադան (Պարսկաստան): Հանգրվանել են Բասրայում, որտեղից 1921–ի հունիսին ժողդ–ի ստվար մասը մեկնել է Հայաստան, իսկ ինքը մնացել է Իրաքում:

ՇԱՄԱԽԻԻ ԲԱՐԲԱՌ, հայ–ի «ում» ճյուղի բարբառ: Խոսվում է Շամախի բ–ում և մերձակա մի քանի գյուղերում: Ունի երկաստիճան ձայնեղազուրկ (պ–փ) բաղաձայն. համակարգ:

ՇԱՄԱՆՈՒԹՅՈՒՆ (Էվենկ. – ոգևորություն), կրոն, որի հիմքում սրբազան ծեսի ընթացքում (հանգեցնում է էքստատիկ. վիճակի, որն ուղեկցվում է երգեցողությամբ և թմբկահարմամբ) շամանի և ոգիների միջև շփման մասին պատկերացումներն են:

ՇԱՄԲ, գետ ՀՀ Սյունիքի մարզում, Որոտանի ձախ վտակը: Սկիզբ է առնում Սյունիքի բարձրավանդակի Իշխանասար լ–զանգվածի հվ. լանջից՝ 2780 *մ* բարձր–ից: Երկ.՝ 11,4 *կմ*, ավազանը՝ 22 *կմ*^{2}, ջրի տարեկան միջին ծավալը՝ 0,22 *մ*^{3}/*վ*: Մնումը հիմնականում ձնաանձրևային է, վարարումը՝ ապրիլ–հունիսին:

ՇԱՄԲԻ (Scirpus), **գիզրուկ, ճլախոտ**, բոշխազգիների ընտանիքի բազմամյա, հազվադեպ՝ միամյա, սողացող կոճղարմատներով խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 250–ից ավելի տեսակ, ՀՀ–ում՝ 1 (անտառ. Շ.)՝ գրեթե բոլոր մարզերում:

ՇԱՄԲԻ ՁՐԱՄԲԱՐ, ՀՀ Սյունիքի մարզում՝ Որոտան գետի միջին հոսանքում՝ մոտ 1350 *մ* բարձր–յան վրա: Գործարկվել է 1970–ին: Ընդունում է Շամբի ջրէկի և Որոտան գետի ջրերը: Մակերեսը՝ 1,12 *կմ*^{2}, ջրատարողությունը՝ 13,6 մլն *մ*^{3}:

ՇԱՄԲԻ ՁՐԷԿ, Որոտանի կասկադի 2–րդ՝ ամենահզոր ջրէկը: Գործարկվել է 1977–ին, աշխատում է 2 ագրեգատ, որոնց ընդհ. հզորությունը 171 *ՄՎտ* է, տարեկան արտադրանքը՝ 350 մլն *կՎտ·ժ*:

ՇԱՄԻԼ (1799–1871), Դաղստանի և Չեչնիայի 3–րդ իմամը՝ 1834–59–ին, ցար. իշխանության և տեղ. իշխանների դեմ կռվկաս. լեռնականների պայքարի առաջնորդ (տես *Կովկասյան պատերազմ 1817–64*): Շ–ի օրոք ավարտվել է իմամության կազմավորումը: 1859–ի օգոստ–ին Շ. 400 մյուդիրներով պաշարվել է Գունիբ աուլում, անձնատուր եղել գեն. Ի. Դ. Լազարևին և ուղարկվել Կալուգա: 1870–ին մեկնել է Մեքքա՝ ուխտագնացության. վախճանվել է Մեդինայում:

ՇԱՄԻԼՈՎ, Արաբ Շամոեի (1897–1978), քուրդ գրող: Քրդ. խորհրդ. գրկ–յան հիմնադիրներից: ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1967): Իրաքի Քրդստանի ԳԱ թղթ. անդամ (1972): Հեղինակ է «Երջանիկ կյանք» (1959, հայ.՝ «Բախտի ճանապարհ», h. 1, 2, 1961, 1964) վեպի, «Քուրդ հովիվը» (1931, հայ.՝ 1935, 1971), «Ալագյոզի քրդերը» (1932, հայ.՝ «Ալագյոզի քրդերը», 1932) վիպակների, «Քրդական ժողովրդական հեքիաթներ» (1967) ժող–ի, «Դրմ–դրմ» (հայ.՝ 1966) քրդ. առաջին վեպի, «Հայաստանի քրդերը» (1960) վավերագր. ֆիլմի սցենարի: Կազմել և տպագրել է թաթար–ի քերակ–ը: Հայ. հրատարակվել է նաև «Փոքրիկ հովիվը» (1931) երկը:

ՇԱՄԻՐԱՄ, *Շամուրամաթ* (աքքադ.՝ Samiram, Sammuramat), Ասորեստանի թագուհի՝ մ. թ. ա. IX դ–ի վերջերին: Վարել է նվաճող. պատերազմներ (հիմնականում՝ Մարաստանում): Ավանդությունը սխալմամբ Շ–ի անվ. հետ է կապում աշխարհի 7 հրաշալիքներից Բաբելոնի «կախովի այգիների» կառուցումը (մ. թ. ա. VI դ.): *«Արա Գեղեցիկ և Շամիրամ»* ավանդապատումը կապվում է Շ–ի անվ. հետ:

ՇԱՄԻՐԱՄԻ ՍԱՐԱՎԱՆԴ, Արագած լ–զանգվածի հվ. փեշերին՝ ՀՀ Արագածոտնի մարզում: Բարձր.՝ 900–1300 *մ*: Մակերևույթը բլրաալիքավոր է՝ խարամ. կոներով կտրտված ձորակներով ու հովիտներով: Կան տուֆի պաշարներ: Լանդշաֆտը՝ կիսաանապատ. և չոր տափաստան.: Տարածքում է *Արզնի–Շամիրամ ջրանցքը*:

ՇԱՄԻՐԱՄԻ ՍԵԼԱՎ, գետ ՀՀ Արագածոտնի և Արմավիրի մարզերում: Սկիզբ է առնում Արագած լ–ան հվ–արմ. լանջերից և ձախից միանում Արմավիրի ջրանցքին: Հոսքը միայն գարնանն է: Երկ.՝ 40 *կմ*:

ՇԱՄԻՐԽԱՆՅԱՆ Տիգրան Ավագի (1899–1952), ռեժ., դերասան: ՀԽՍՀ ժող. արտիստ (1949): 1923–30–ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասան, 1934–43–ին (1937–40–ին՝ տնօրեն և գեղ. ղեկ.)՝ ռեժ., 1943–ից՝ ԵՊՀԹ գլխ. ռեժ.: Դերերից են՝ Սգանարել (Մոլիերի «Դոն Ժուան»), Գիքո (Գ. Սունդուկյանի «Պեպո»), բեմադրել է Գ. Սմիռնովի «Պայթյուն» (1929), Ա. Գուլակյանի «Յասում» (1942), Ա. Ս. Պուշկինի «Քարե հյուրը», Վ. Շեքսպիրի «Ամառային գիշերվա հեքիաթը» (1944) և այլ գործեր:

ՇԱՄԼՈՒՂԻ ՊՂՆՁԻ ՀԱՆՔԱՎԱՅՐ, ՀՀ Լոռու մարզում՝ Ալավերդու կամարաձալքի հս–արլ. մասում: 1770–ից շահագործել են հուն., ֆրանս., ապա՝ ռուս. և հայկ. ընկ–ներ: Հանքանյութը կազմված է պիրիտ, խալկոպիրիտ, մարկազիտ, գալենիտ, քվարց, բարիտ և այլ միներալներից: Պղնձի միջին պարունակությունը՝ 3–4 %: Հանդիպում են նաև բնածին ոսկի, արծաթ, սելեն, թելուր ևն:

ՇԱՄԽՈՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1826, *Շամքորի ճակատամարտ*, 2–րդ ռուս–պարսկ. պատերազմի ճակատամարտերից: Տեղի է ունեցել սեպտ. 3 (15)–ին Շամխոր գ–ի (այժմ՝ Շամխոր ք.՝ Ադրբեջանում) մոտ՝ գետի ափին: Գեն. Վալերիան *Սադաթովի* 2– հզ–անոց ռուս. զորաջոկատը (որի կազմում էին հայկ. աշխարհազոր. ջոկատները) պարտության է մատնել պարսկ. 10–հզ–անոց զորքին: Տես նաև *Էլիզավետպոլի ճակատամարտ*:

ՇԱՄՅԱԿԻՆ Իվան Պետրովիչ (1921–2004), բելառուս գրող: ԲԽՍՀ ժող. գրող (1972): Բելառուսի ԳԱԱ ակադ. (1994, թղթ. անդամ՝ 1980–ից): Սոց. աշխ. հերոս (1981): Հեղինակ է «Խոր հոսանք» (1949), «Սիրտն ափի մեջ» (1964, հայ.՝ 1970), «Ատլանտներ և կարիատիդներ» (1974), «Ինձ տուր քո ցավը» (1980, հայ.՝ 1984) վեպերի, «Անհանգիստ երջանկություն» (1956–66), «Ապաստարանի փնտրտուքներ» (2001) վիպակների շարքերի, «Արմատներ և ճյուղեր» (1986) ինքնակենսագր. երկի և այլ գործերի:

ԽՍՀՄ (1951), ԲԽՍՀ Յ. Կոլասի անվ. (1965, 1967), ԲԽՍՀ (1982) Պետ. մրց–ներ:

ՇԱՄՇԱԴԻՆԻ ԽՈՍՎԱԾՔ, հայ–ի «ում» ճյուղի խոսվածք: Մտնում է Ղազախ–Կիրովաբադի միջբարբառի մեջ: Ունի երկաստիճան ձայնեղազուրկ (պ–փ) բաղաձայն. համակարգ:

ՇԱՄՇԵՎ, Կիրիլ Նիկոլաևիչ (1925–2014), ռուս. մեխանիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1987): Սոց. աշխ. հերոս (1991): ՌԴ գիտ. և տեխնիկայի վաստ. գործիչ (1980): Աշխ–ները վերաբերում են հոծ միջավայրերի մեխանիկային, գազ. դինամիկային, ցածր ջերմաստիճաններին և վակուումին:

ԽՍՀՄ (1979, 1987), ՌԴ (1997) Պետ., Լենինյան (1984) մրց–ներ:

ՇԱՄՇԻԵՎ, Բոլոտբեկ, **Բոլոտ** (ծ. 1941), ղրղզ կինոռեժ., սցենարիստ: ԽՍՀՄ ժող. արտիստ (1991): Նկարահանել է «Մանասչի» (1965), «Հովիվ» (1966) վավերագր., «Կրակոց Կարաշ լեռնանցքում» (1970), «Իսսիկ–Կուլի ալ կակաչները» (1972), «Սպիտակ շոգենավ» (1976), «Վաղեկ կռունկներ» (1980), «Գայլի փոսը» (1984) գեղ. և այլ ֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1977):

ՇԱՄՇԻՆՅԱՆ Հարություն Իսահակի (1856–1914), նկարիչ: Հեղինակ է կենցաղ. ժանրի կտավների («Հին Թիֆլիս», 1887, «Շեյթան բազար», 1890), բնանկարների, («Սանահինի կամուրջը», 1899, ևն), դիմանկարների («Նկարչի մոր դիմանկարը» ևն): Հայ իրականության մեջ առաջիններից է օֆորտի տեխնիկայով ստեղծել գրաֆիկ. թերթեր (դիմանկարներ, բնանկարներ):

ՇԱՄՇԻՆՈՎԱ Անժելիկա Միխայիլի (1937–2009), ակնաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1989), պրոֆ. (1999): Կուբայի ԳԳԱ թղթ. անդամ: ՌԴ վաստ. բժիշկ (2005): Աշխ–ները վերաբերում են տեսողության ֆունկցիոնալ հետազոտություններին, ցանցաթաղանթի և տեսող. նյարդի ժառանգ. ու բնածին հիվանդություններին:

ՇԱՄՇՅԱՆ Արամ Հովհաննեսի (1925–2010), ջութակահար, մանկավարժ: ԵՊԿ պրոֆ. (1976): ՀԽՍՀ վաստ. արտիստ (1965): ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1974): Հայ կոմպոզիտորների (Է. Հովհաննիսյան, Գ. Հովունց, Ս. Նաղդյան և ուր.) որոշ երկերի առաջին կատարողը:

ՇԱՄՈՎ, Վլադիմիր Նիկոլաևիչ (1882–1962), ռուս. վիրաբույժ: ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1945), բժշկ. ծառայության գեներալյտ. (1943): ԽՍՀՄ–ում առաջիններից է կիրառել արյան, նաև դիակի արյան (1928) փոխներարկումը: Աշխ–ները վերաբերում են նյարդավիրաբուժությանը: Լենինյան մրց. (1962):

ՇԱՄՉԻ ՄԵԼՔՈ (Գուլքանյան Մելքիսեդեկ Բեժանի, 1750–ական թթ.–1821–ից հետո),

աշուղ, բանաստեղծ: Ստեղծագործել է հայ., վրաց. և թուրք.: Պահպանվել են 15 հայ. («Անգամ արա գովքըդ ասիմ», «Ի վերայ աւերման Տփխիս քաղաքի գալստեամբ Աղա Մահմեդ-խանի» ևն) և 8 վրաց. երգեր: Հեղինակ է նաև ձոների, ներբողների («Ով սրբազան Յոսէփ, մինձ կաթուղիկոս» ևն):

ՇԱՄՊԱՅՆ (Ֆրանսիայի *Շամպայն* պատմ. մարզի, որտեղ XVII դ-ի վերջին առաջին անգամ կազմակերպվել է այդ գինու արտադր-յունը, անվանումից), խաղողի փրփրուն գինի: Փակ անոթներում 2-րդային խմորման միջոցով գինին հագեցվում է ածխաթթու գազով: Մշակում են խաղողի հատուկ սորտերից: Ըստ շաքարի պարունակության (%-ներով)՝ տարբերում են Շ. բրյուտ (0,3), ուժեղ անապակ (0,8), անապակ (3), կիսաանապակ (5), կիսաքաղցր (8), քաղցր (10):

«ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԵՐԵՎԱՆԻ, հիմնադրվել է 1939-ին, սկզբում արտադրել է միայն քաղցր և չոր գինիներ, 1954-ից՝ նաև շամպայն գինիներ, ապա՝ նաև կոնյակ և օղի: Սեփականաշնորհվել է 1995-ին:

ՇԱՄՊԻՆՅՈՆՆԵՐ (Agaricaceae), ագարիկոնազգիների կարգի գլխարկավոր սնկեր: Հայտնի է մոտ 60 տեսակ՝ տարածված ամենուրեք: Ուտելի են (բացառությամբ 2 տեսակի): Բազմաթիվ երկրներում (նաև ՀՀ-ում) աճեցվում են արտադր. ծավալներով:

ՇԱՄՊԼԵՅՆ (Champlain) Սամուել (1567–1635), ֆրանսիացի քարտեզագիր, Հս. Ամերիկայի հետազոտող, Կանադայի 1-ին նահանգապետը: 1605–07-ին հետազոտել է ԱՄՆ-ի Ատլանտ. ափի մի մասը: 1609-ին հայտնաբերել է Ադիրոնդակ լ-զանգվածը և լիճ (կոչվում է նրա անունով): Սր Լավրենտիուս գետով ուղևորվել է (1615–16) մինչև Հուրոն լիճը:

ՇԱՄՊԼԵՅՆ, լիճ ԱՄՆ-ում և Կանադայում: Մակերեսը՝ 1137 *կմ*^{2}, խոր.՝ 183 *մ*: Ջրհոսքը՝ Սր Լավրենտիուս գետով: Հուդզոն գետին միացած է ջրանցքներով: Գլխ. նվնիցգստ-ը՝ Բեռլինգտոն: Հայտնաբերել է Ս. *Շամպլեյնը*:

ՇԱՄՊՈԼԻՈՆ (Champollion) Ժան Ֆրանսուա (1790–1832), ֆրանսիացի բանասեր, հնագետ: Եգիպտագիտ-յան հիմնադիրը: Գրենոբլի (1807) և Ֆրանսիայի (1830) ակադ-ների, Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. (1826) անդամ: Ընթերցել է *Հռոզեթյան արձանագրությունը*, շարադրել հինեգիպտ. գրի վերծանման հիմն. սկզբունքները: Հեղինակ է «Եգիպտոսը փարավոնների օրոք» (1814) և այլ աշխ-ների, հինեգիպտ-ի առաջին քերակ-յան և բառարանի:

ՇԱՄՍՈՆ (Chamson) Անդրե (1900–1983), ֆրանսիացի գրող: Դիմադրության շարժման մասնակից: Հեղինակ է «Մեր նախնիները գալլերն են» (1958) վեպ-պամֆլետի, «Ձյուն և ծաղիկ» (1951) քննադատ., «Հրաշալին» (1967), «Անվախը…» (1977) պատմ. և այլ վեպերի, «Մեր օրերի հանրագումարը» (1954) ինքնակենսագր. երկի:

ՇԱՄՏԱՆՃՅԱՆ Միքայել (1874–1926), հրապարակախոս, խմբ., թարգմանիչ: 1898–99-ին՝ «Մասիս» հանդեսի, 1903–04-ին՝ «Ծաղիկ» շաբաթաթերթի խմբ., 1911-ին՝ «Ուստան» հանդեսի հիմնադիր-խմբ. (Տիգրան Չոկյուրյանի հետ): Թարգմանել և 1919-ին Կ. Պոլսում իր հիմնադրած «Ազգային քաղաքական մատենաշարով» լույս է ընծայել Հ. Բարբյուսի, Յ. Լեփսիուսի, Հ. Մորգենթաուի՝ Մեծ եղեռնի մասին վկայությունները ևն: 1925–26-ին Բեյրութում հրատարակել է *«Հայ կեանք»* պարբ-ը: Հեղինակ է «Հայ մտքին հարկը՝ Եղեռնին» (1919) գրքի:

ՇԱՄՓՐՈՒԿՆԵՐ (Laniidae), *ճնճղուկանմանների* կարգի թռչունների ընտանիք: Հայտնի է 69 տեսակ, ՀՀ-ում՝ 5 (ժուլան, կարմրաճակատ, սևաճակատ, մոխրագույն, շիկապոչ Շ.): Փոքր չափերի ամրակազմ թռչուններ են: Զոհին սկզբում «շամփրում է» (այստեղից՝ անվանումը) ծառի չոր ճյուղերին կամ խոշոր փշերին, ապա պահեստավորում:

ՇԱՄՖՈՐ (Chamfort) Նիկոլա Սեբաստիեն-Ռոկ դր (1741–1794), ֆրանսիացի գրող: Հեղինակ է «Մաքսիմներ և խորհրդածություններ» (հրտ.՝ 1795) աֆորիզմների, անեկդոտների ժող-ի, որտեղ ներկայացրել է XVIII դ-ի ազնվականության կյանքը երկրում Ֆրանս. հեղ-յան նախօրեին, «Երիտասարդ հնդկուհին» (բեմ.՝ 1764) կատակերգության, «Մուստաֆա և Զեանգիր» (բեմ.՝ 1776) ողբերգության:

ՇԱՅԲԱՆՅԱՆՆԵՐ, *Շայբանիներ*, արաբ. տոհմ, VII–X դդ-ում իշխել է Աղձնիք նահանգում: Շ-ից Եզիդ իբն Մազիադը, Ասադը, Խալիդը, Մուհամմադը եղել են *Արմինիայի* ոստիկաններ: IX դ-ի 2-րդ կեսին Շ-ից Իսա իբն ալ-Շայխը խալիֆա Մութամիդի ուղարկած թագը բերել է *Աշոտ Ա* Բագրատունուն: X դ-ի սկզբին կորցրել են իրենց տիրույթները:

ՇԱՅԲՈՆ (Գասպարյան) Աշոտ Գասպարի (1905–1982), գրող: Գիտաֆանտաստիկ. ժանրի հիմնադիրը հայ գրկ-յան մեջ: Հեղինակ է «Կարմիր քաղաքի շրջմոլիկը», «Կովկաս» (երկուսն էլ՝ 1925) և այլ պոեմների, «Լիրիկա» (1927), «Հայրենական լիրիկա» (1944) բանաստեղծությունների ժող-ների, «Գիշերային ծիածան» (1942), «Սպիտակ ստվերների աշխարհում» (1951), «Երկիր մոլորակի գաղտնիքները» (1960), «Անսովոր պատմություն» (1965) և այլ վեպերի, «Սևանի ձկնորսները» (1936) կինոսցենարի, նաև պիեսների:

ՇԱՅՆ Գրիգորի Աբրամովիչ (1892–1956), հրեա աստղագետ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939): Բացահայտել է (Օ. *Ստրուվեի* հետ) վաղ սպեկտր. դասերի աստղերի արագ պտույտը և չափել արագությունը (1929): Հայտնաբերել է նոր գազ. միգամածություններ և որոշ աստղերի (այսպես կոչված՝ ածխածնային) մթն-ում ^{13}C իզոտոպի անոմալ պարունակություն: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

ՇԱՅՆԱ (Szaina) Յուզեֆ (1922–2008), լեհ գեղանկարիչ, բեմանկարիչ, ռեժ.: Եղել է Օսվենցիմի, Բուխենվալդի համակենտրոնացման ճամբարներում: 1971–72-ին՝ Վարշավայի «Կլասինա» թատրոնի տնօրեն, որը վերափոխել է Արվ-ի կենտրոնի (ղեկ.՝ մինչև 1982-ը):

ՇԱՆ (ինքնանվանումը՝ թհաի նյո), թաի խմբի ժողդ Միանմայում (4,3 մլն, 2010), Թաիլանդում (100 հզ.): Լեզուն՝ շաներեն: Հավատացյալները հիմնականում բուդդայական են:

ՇԱՆ ՅԱՆ (մ. թ. ա. 390–338), պետ. գործիչ, բարենորոգիչ Հին Չինաստանում: Ճացզյա փիլ. դպրոցի հիմնադիրներից: Օրինականացրել է հողի մասն. սեփականությունը, ազնվականներին զրկել է կառավար. պաշտոնները ժառանգաբար փոխանցելու իրավունքից: Մահապատժի է ենթարկվել ազնվականության ճնշմամբ:

ՇԱՆԲԵՐԱՆ (Antirrhinum), **առյուծաբերան**, խլածաղկազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 40 տեսակ, ՀՀ-ում մշակում են 1՝ խոշոր Շ.: Գեղազարդիչ է: Պարտեզագործության մեջ օգտագործում են հատկապես խոշոր և վառ ծաղիկներով տեսակները, գաճաճները՝ ծաղկաթմբերի գազոնների, ծաղկազարդման համար:

ՇԱՆԳՈՒՆ, թ-կղզի Արլ. Չինաստանում: Դեղին ծովում խորանում է մոտ 350 *կմ*: Ափերը կտրտված են ծոցերում: Լեռնոտ է, բարձր.՝ 923 *մ*: Խոշոր նվինգստ-ը՝ Ցինդաո:

ՇԱՆԳՈՒՆ, պրովինցիա Արլ. Չինաստանում: Տարածքը՝ 153,3 հզ. *կմ*^{2}, բն.՝ 95,8 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ *Ցզինան*:

ՇԱՆԵԼ (Chanel) Գաբրիել (Կոկո, 1883–1971), կանանց հագուստների ֆրանսիացի մոդելավորող: Փարիզում հիմնադրել է «Շանելի տուն» (1914–39, 1952-ին վերաբացվել է): «Գարսոն» ոճի հիմնադիրը. օգտագործել է տղամարդու հագուստի ձևվածքի և աքսեսուարի տարրեր: Ստեղծել է սեփ. պերճաշուք ոճ: Ճանաչված է նաև «Շանել № 5» օծանելիքը:

ՇԱՆԵՐԵՆ, շաների լեզուն: Պատկանում է չին-տիբեթ. լեզվաընտանիքի թաի-չին. լեզվաճյուղին: Գիրն ունի 2 տեսակ՝ տառ. և վանկ., որոնք առաջացել են բրահմայից:

ՇԱՆԹ Լևոն (Նահաշպետյան, ապա՝ Սեղբոսյան, 1869–1951), գրող, մանկավարժ, հաս. գործիչ: ՀՅԴ կուս-յան անդամ: Հեղինակ է բանաստեղծությունների, «Լեռան աղջիկը» (1893) պոեմի, «Երազ օրեր» (1896), «Դուրսեցիները» (1896), «Վերժին» (1897), «Դերասանուհին» (1899) և այլ վիպակների, «Եսի մարդը» (1904), «Ճամբուն վրայ» (1914) պիեսների, որտեղ արծարծել է անհատի և հաս-յան փոխհարաբերության, ազգ-ազատագր. պայքարի հարցեր, նաև պատմ. թեմաներով «Հին աստուածներ» (1909), «Կայսր» (1916), «Ղեթայուածը» (1921), «Ինկած բերդի իշխանուհին» (1923), «Օշին պայլ» (1932) խորհրդապաշտ. դրամաների, «Հոգիները ծարաւի» (1945) հոգեբ. վեպի, «Մեր անկախութիւնը» (1925), «Անկախությունը պահանջ ազգային գոյության» (1991), «Ազգութիւնը հիմք մարդկային ընկերութեան…» (2008) գրականագիտ., բանահյուս., մանկավարժ., պատմագիտ. աշխ-ների: Կազմել է «Լուսաբեր» (1807, Հ. Թումանյանի, Ս. Լիսիցյանի հետ) դասագիրքը: Կատարել է նաև թարգմ-յուններ:

«ՇԱՆԹ», գր., հաս. ամսաթերթ (1910, Բոստոն): Հիմնադիր-խմբ.՝ Շահան Նաթալի:

«ՇԱՆԹ», ազգ., գր., գեղ., քաղ., գիտ. պարբերաթերթ (1911–15, 1918–19, Կ. Պոլիս): Խմբ.՝ Մերուժան Պարսամյան:

«ՇԱՆԹ», հայկ. հեռուստաընկ., հիմնադրվել է 1994-ին Գյումրիում, 2001-ից՝ Երևանում: 1995-ից լույս է ընծայում «Շանթ» շաբաթաթերթը: 1998-ին ստեղծվել է «Ռադիո Շանթը», 2017-ից՝ «Շանթ Պրեմիում» 1-ին հայկ. HD արբանյակ. հեռուստաալիքը:

ՇԱՆԹԱՐԳԵԼ, շինքերը, արդ., տրանսպորտ., գղտ. և այլ կառույցներ կայծակի ուղիղ հարվածներից պաշտպանող հարմարանք: Բաղկացած է բարձունքներին տեղակայվող և կայծակի հարվածն ընդունող մետաղե ձողից կամ մետաղաճոպանից և հուսալի հողանցումից:

ՇԱՆԹՈՒՈՒ (Սվատոու), ք. Հվ-արլ. Չինաստանում՝ Գուանդուն նահանգ-ում, նվինգստ

Հանցգյան գետի գետաբերանում: Բն.՝ 1,5 մլն (արվարձաններով՝ 4,8 մլն, 2010): Ունի օդանավակայան:

ՇԱՆԻԴԱՐ, քարիդարյան հնավայր–քաղաք Հայկ. լ–աշխարհի հվ–արլ. մասում՝ Տավրոս և Զագրոս լ–շղթաների միացման վայրում՝ Մեծ Զավ գետի վերին հոսանքի շրջանում: Քարայրի աղգն բարձր.՝ 8 *մ*, երկ.՝ 40 *մ*, լայն.՝ մինչև 53 *մ*: 14 *մ* հաստ–յան նստվածքներն ընդգրկում են 4 մշակութ. շերտեր. վերին 2–ը վերաբերում են էպիպալեոլիթին, նեոլիթին, ինչպես նաև հետագա մշակութ. փուլերի, 3–րդը (բարբարոսյան պալեոլիթ. մշակույթ) ունի 28–26 հզ., իսկ 4–րդը (մուստիերյան մշակույթ)՝ 100–40 հզ. տարվա հնություն: Ստորին շերտում հայտնաբերվել են նեանդերթալյան մարդկանց ոսկր. մնացորդներ: Քարայրից 4 *կմ* հվ Զավի–Չեմի–Շանիդար հնավայրն է (մ. թ. ա. մոտ X հզ–ամյակ):

ՇԱՆԻՉԵ Ակակի Գաբրիելի (1887–1987), վրացի լեզվաբան–բանասեր, կովկասագետ, հայկաբան: Պրահայի արևելագիտ–յան ինստ–ի (1937) և ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1939), ՎԽՍՀ ԳԱ ակադ. (1941, փոխնախագահ՝ 1948–50–ին): ՎԽՍՀ (1946) և ՀԽՍՀ (1971) գիտ. վաստ. գործիչ: Հեղինակ է քարթվել. լեզուներին և վրաց. գրկ–յանը վերաբերող աշխ–ների: Էջմիածնի մտնդ–ում ուսումնասիրել է «Երգ երգոց»–ի գրչագրերը, ստուգաբանել հայ. մի շարք բառեր, տերմիններ ևն: Հրատարակել է խևսուր. և սվան. պոեզիայի նմուշներ, հինվրաց. գրկ–յան հուշարձաններ: Հայ. հրատարակվել է «Հին վրացերենի քերականություն» (1983) աշխ–ը:

ՇԱՆԻՆ (Shanin) Թեոդոր (ծ. 1930), բրիտանացի սոցիոլոգ և պատմաբան: ՌԳԱ ակադ. (1990): Մոսկվայի սոցիալ. և տնտ. գիտ–յունների բարձրագույն դպրոցի հիմնադիրներից. 1995–2007–ին՝ ռեկտոր, 2008–ից՝ նախագահ: Աշխ–ները վերաբերում են գյուղացիագիտ–յանը, պատմ. գիտելիքի սոցիոլոգիային, շահավետ տնտեսագիտ–յանը:

ՇԱՆԿԱՐ Ռավի (1920–2012), հնդիկ կոմպոզիտոր, վիրտուոզ սիթառահար: Գործերում համադրել է հնդ. և եվրոպ. երաժշտ. մշակույթների տարրեր: Հեղինակ է բալետների, կոնցերտների՝ սիթառի և նվագախմբի համար, կինոերաժշտության և այլ երկերի:

ՇԱՆԿԻՐ ՓՓՓՈՒԿ, վեներ. հիվանդություն. հարուցիչները ստրեպտոբացիներն են: Բնորոշ են փափուկ, ցավոտ խոցերը՝ հարուցչի թափանցման հատվածում թարախ. արտադր–յամբ և մոտակա ավշահանգույցների բորբոքումով (բուբոններ):

ՇԱՆՀԱՅ, ք. Չինաստանում՝ Յանցզիի աջ վտակ Հուանգպու գետի և Արլ–չին. ծովի ափերին: Բն.՝ 24,1 մլն (արվարձաններով՝ 34 մլն, 2015): Չինաստանի ամենախոշոր քաղաքը, տնտ. խոշոր կենտրոնը: Կարևորագույն տրանսպորտ. հանգույց է, աշխարհում խոշորագույն նավահանգստ. համալիր (բեռնաշրջանառությունը՝ մոտ 560 մլն *տ*, 2007): Գործում են Պուդուն և Հունցյաո օդանավակայանները, մետրոն: Շ. առևտրաֆին. համաշխ. կենտրոններից է: Ունի ֆոնդային բորսա, մի շարք մետաղագործ. ձեռն–ներ: Կան համալսարաններ, բժշկ., մանկավարժ. և օտար լեզուների ինստ–ներ, ԳՀԻ–ներ: Շ. աճել և քաղաք է դարձել հնագույն ձկնորս. ավանից: XVI դ–ից դարձել է առևտր. և արհեստագործության կենտրոն: Նշանակալի ճարտ. հուշարձաններից են Չենհուան–մյաոյի և Յույֆեսայի (Բուդդայի նեֆրիտե արձանով) տաճարները, հինգհարկանի, ութանիստ Լունհուա պագոդան ևն:

ՇԱՆՄԵԼԵ (Champmeslé) Մարի (1642–1698), ֆրանսիացի դերասանուհի: 1680–1697–ին՝ «Կոմեդի Ֆրանսեզ» (Փարիզ) թատրոնի դերասանուհի: Ժ. Ռասինի ողբերգությունների բեմադրությունների առաջին դերակատարն է, բեմարվ–ում հաստատել է կլասիցիզմը:

ՇԱՆՆՈՆ (Shannon), Իռլանդիայի ամենամեծ գետը: Երկ.՝ 368 *կմ*, ավազանը՝ 15,7 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ մոտ 200 *մ*^{3}/*վ*: Հոսում է հարթավայր. մի շարք լճերի միջով և թափվում Ատլանտ. օվկ.՝ առաջացնելով էստուար: Կառուցված է ջրէկ: Նավարկելի է: Ջրանցքներով հասնում է մինչև Դուբլին ք.: Ակունքին մոտ է Լիմերիկ նվինգստո–ը:

ՇԱՆՇԻԱՀՎԻԼԻ Սանդրո Իլյայի (1888–1979), վրացի գրող: ՎԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1930): Հեղինակ է Ռուսաստանում 1905–07–ի հեղ–յան թեմաներով «Արսենա» (բեմ.՝ 1936, հայ.՝ 1939), «Կրծանիսի հերոսը» (բեմ.՝ 1942), «Իմերեթյան գիշեր» և այլ պիեսների, նաև բանաստեղծությունների: Հայ. հրատարակվել է «Պատմվածքներ» (1930) ժող–ը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949):

ՇԱՆՇԻԵՎ (Շանշյան) Սերգեյ Կոստանդինի (1893–1974), հիդրոէներգետիկայի բնագավառի ճարտարագետ–կոնստրուկտոր: Տեխ. գիտ. թեկնածու (1974): ՀԽՍՀ վաստ. գյուտարար (1965): Մշակել է ջրատեխ. թունելների երեսպատման հաշվարկների եղանակ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ՇԱՆՇԻՅԱՆ Պետրոս Սամվելի (1819–1889), մանկավարժ, հաս. գործիչ: 1849 և 1851–57–ին եղել է Թիֆլիսի Ներսիսյան, 1863–64–ին՝ Շուշիի թեմ. դպրոցի տեսուչ: Վերադառնալով Թիֆլիս՝ հիմնադրել է մասնավոր դպրոց: Հեղինակ է ազգապահպանող. ոգով գրված աշխ–ների և հոդվածների:

ՇԱՆՍՈՆ (ֆրանս.՝ chanson – երգ), 1. պոլիֆոնիկ երգի ժանր: Աշակել են XV–XVI դդ–ում ֆրանկո–ֆլամանդացի կոմպոզիտորները (*Գիյոմ դը Մաշո*, Ք. *Ժանեքեն*՝ բազմաձայն Շ–ի հիմնադիրը): 2. Ֆրանս. էստրադ. երգի ժանր (XIX դ–ի վերջին և XX դ–ի սկզբին): Շ. կատարողները կոչվում են շանսոնիե, որոնցից ճանաչված են Մ. Շևալիեն, Է. Պիաֆը, Ի. Մոնտանը, Ժ. Բրասսենսը, Շ. Ազնավուրը, Մ. Մաթիոն, Պ. Կասսը և ուր.:

ՇԱՆՏԱ (Sánta) Ֆերենց (1927–2008), հունգար գրող: Հեղինակ է «Հինգերորդ կնիքը» (1963, հայ.՝ 1988, կինոնկար՝ 1976), որտեղ նկարագրել է Դիմադրության շարժումը, 1956–ի իրադարձություններին նվիրված «Քսան ժամ» (1964), «Դավաճան» (1966), «Մահվան մահը» (1994) և այլ վիպակների, «Ազատության շեմին» (1993) հրապարակախոս. նյութերի ժող–ի, նաև պատմվածքների: Հունգարիայի Լ. Կոսպալայի անվ. Պետ. մրց. (1973):

ՇԱՆՏԱՐՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ, 15 կղզուց բաղկացած կղզեխումբ Օխոտի ծովում՝ ՌԴ Խաբարովսկի երկրամասում: Տարածքը՝ 2500 *կմ*^{2}: Առավել խոշոր կղզիներն են Մեծ և Փոքր Շանտանները, Ֆեկլիստովան և Բելիչիյը: Բարձր.՝ 720 *մ*: Ծածկված է բալասանի (եղևնի), կվենու անտառներով:

ՇԱՆՏՈՒՒ, **Սվատոու**, ք–նվինգստո Չինաստանի Գուանդուն պրովինցիայում՝ Հանցգյան գետի գետաբերան. հատվածում: Բն.՝ 5,4 մլն (2014):

ՇԱՇԱ (Sciascia) Լեոնարդո (1921–1989), իտալացի գրող: Հեղինակ է իտալ. մաֆիայի մասին «Բուն հայտնվում է ցերեկով» (1961, կինոնկար՝ 1968), «Յուրաքանչյուրին՝ իրենը» (1965, կինոնկար՝ «Ամեն գնով», 1967), «Համատեքստ» (1971), «Մարդասպաններ Պալերմոյից» (1976) վիպակների, նաև պատմավեպերի, պիեսների, բանաստեղծությունների:

ՇԱՇԻԿՅԱՆ Ենոք (Բաղդիկ) Համբարձումի (1922–2001), մանկավարժ, երաժիշտ, երգերի հեղինակ, հաս. գործիչ: Արխազիայի մշակույթի վաստ. աշխատող (1983): Սուխումի մշակույթի, ժող. ստեղծագործության հանրապետ. տներին ու ֆիլհարմոնիային կից ստեղծել է հայկ. ժող. երգի ու պարի ինքնագործ անսամբլներ: Հեղինակ է «Հայաստան», «Երևան», «Շոթա Ռուսթավելի», «Արարատ» և այլ երգերի:

ՇԱՇԿԻ, սեղանի խաղ 64 (ռուս. Շ.) կամ 100 (միջազգ. Շ.) քառակուսի խաղադաշտերով խաղատախտակի վրա՝ 2 մրցակցի միջև, որոնցից յուրաքանչյուրն ունի 12 (ռուս. Շ.) կամ 20 (միջազգ. Շ.) սև կամ սպիտակ խաղաքար: Խաղի նպատակը մրցակցի խաղաքարերի «ուտելն» է կամ այնպիսի դիրքի ստեղծումը, երբ դրանք գրկվում են քայլ կատարելու հնարավորությունից: Շ–ու համաշխ. ֆեդերացիայում (ՇՀՖ, FMID, հիմն.՝ 1974) ընդգրկված է 60 երկիր (2015): Համաշխ. օլիմպիադաներն անցկացվում են 1986–ից (միջազգ. Շ.), աշխարհի առաջնությունները՝ 1984–ից (միջազգ. Շ.), 1985–ից (ռուս. Շ.), Եվրոպայինը՝ 1965–ից (միջազգ. Շ.):

ՇԱՊԱՆՅԱՆ (Շաբանյան) Արսեն (1864–1949), նկարիչ: Ստեղծագործել է հիմնականում ծովանկարչության բնագավառում («Լուսնի լույսով», «Պայծառ գիշեր», «Վերջալույսը Բրետանում», «Ծովային տեսարան») ևն: Հեղինակ է նաև կենցաղ. կոմպոզիցիոն պատկերների ու նատյուրմորտների, որոնց բնորոշ է բանաստեղծ. խոհականությունը:

Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» շքանշան (1926):

ՇԱՊԱՆԵՆԿՈ Ալեքսանդր Մաքսիմովիչ (ծ. 1946), ուկրաինացի մարզիկ (բայդարկայով թիավարություն): ԽՍՀՄ ս. վ. վ. (1966): Օլիմպ. խաղերի (1968, 1972), աշխարհի (1966–79), Եվրոպայի (1967–69), ԽՍՀՄ (1967–79) չեմպիոն:

ՇԱՊԻՆ–ԳԱՐԱՀԻՍԱՐ, **Շաբին–Կարահիսար**, ք. և գվո Արմ. Հայաստանի Սեբաստիայի նահգ–ում: Այժմ՝ Թուրքիայի Գիրեսուն իլի Շաբին–Կարահիսար գվո–ի կենտրոնը: Նույնացվում է Նիկոպոլիս գվո–ի Մավրոկաստրոն ք–ի հետ (հուն.՝ Սևաբերդ–Կարահիսար): Շ–Գ. է թարգմանվել թուրք. տիրապետության հաստատումից (1473) հետո: ԱՀՊ–ի նախօրեին ուներ 7 հզ–ից ավելի հայ բն. (1200 տուն): Գործել են Սբ Աստվածածին, Սբ Փրկիչ եկեղեցիները, Սուշեղյան և Սբ Փրկիչ վարժարանները, Օրիորդաց նախակրթարանը: Եղել է Սեբաստիայի (Սվազի) նահգ–ի համանուն գվո–ի կենտրոնը: Հայերը հիմնականում կենտրոնացել են Շ–Գ–ի և Սուշեհրիի կամ Անդրեասի գվոկ–ների 40–ից ավելի բնակավայրերում: Նշանավոր էին Անդրեասս կամ Էնդերես (4 հզ.), Թամզարա (3–3,5 հզ.) գք–ները: Գվո–ում էին Սբ Առաքելոց (ժամանակին՝ առաջնորդանիստ),

Կարմրակ Սբ Նշան, Թամզարայի Սբ Գևորգ վանքերը: Շ–Գ–ի հայերը ենթարկվել են արդուլհամիդյան և Մեծ եղեռնի կոտորածներին (տես *Շապին–Գարահիսարի հերոսամարտ 1915*):

ՇԱՊԻՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ԲԱՐԲԱՌ, հայ-ի «կը» ճյուղի բարբառ: Խոսվել է Արմ. Հայաստանի *Շապին–Գարահիսար* ք–ում: Ունի եռաստիճան խլազուրկ (ր՛–բ–փ) բաղաձայն. համակարգ:

ՇԱՊԻՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏ 1915, *Շապին–Գարահիսարի* հայ բնակչության գոյամարտը թուրք. զորքերի ու հրոսակների դեմ 1915-ի հունիսին: Ոստիկաններն ու ասկյարները հունիսի 2-ին շրջապատել են քաղաքի հայկ. թաղամասը և սպանել շուրջ 400 մարդու: Մի քանի օրում ավերվել է շուրջ 3 հզ. տուն: Հայերը (5 հզ–ից ավելի, հիմնականում՝ կանայք ու երեխաներ) նահանջել են Շապին-Գարահիսարի մերձակա հին բերդը: Ստեղծվել է բերդի պաշտպ–յան Զինվ. խորհուրդ (ղեկ.՝ Ղուկաս *Դևովլեթյան*): Հունիսի 25-ին գիշերային հարձակումով և որոշ զոհերի գնով հայ մարտիկները ճեղքել են շրջապատումը: Հունիսի 29-ին թուրքերը ներխուժել են բերդ, կոտորել են դեռևս ողջ մնացած երեխաներին, կանանց ու ծերերին:

ՇԱՊԻՏՈ (ֆրանս.՝ chapiteau), ժամանակավոր կրկեսի շինության տեսակ: Կայմերից ամրակներով դեպի կողային հենակները ձգվող բրեզենտե (կամ այլ նյութից) ծածկով գմբեթաձև հավաքովի վրան է:

ՇԱՊԻՐՈ Աղոլֆ Յակովլևիչ (ծ. 1939), ռուս. ռեժ.: Լատվ. ԽՍՀ ժող. արտիստ (1986): 1962–92-ին՝ Ռիգայի ՊՀԹ ռեժ. (1964-ից՝ գլխ. ռեժ.): Բեմադրել է Մ. Ա. Սվետլովի «Քսան տարի անց» (1964), «Չուկոկկալա» (1971, ըստ Կ. Ի. Չուկովսկու), Գ. Կլեյստի «Համբուրգի արքայազնը» (1980), Ա. Ն. Օստրովսկու «Անտառ» (1984) և այլ գործեր: Պիեսներ է բեմադրել նաև Ռիգայի, Տալլինի, Մոսկվայի թատրոններում:

ՇԱՊԻՐՈ Ֆեդոր Լվովիչ (1915–1973), ռուս. ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1968): Աշխ-ները վերաբերում են միջուկ. և նեյտրոն. ֆիզիկային: Առաջինն է փորձով հայտնաբերել գերսառը նեյտրոնները և ուսումնասիրել դրանց հատկությունները: Մասնակցել է արագ նեյտրոնների իմպուլս. ռեակտորի ստեղծմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1971):

ՇԱՊՈՇՆԻԿՈՎ, Բորիս Միխայլովիչ (1882–1945), ռուս ռազմ. գործիչ, ԽՍՀՄ մարշալ (1940): 1928–31-ին՝ Կարմիր բանակի շտաբի, 1932–35-ին՝ Մ. Վ. Ֆրունզեի անվ. ռազմ. ակադ-ի, 1937–40-ին և 1941–42-ին՝ ԳՇ պետ, 1937–43-ին, միաժամանակ՝ ԽՍՀՄ պաշտպ-յան ժողկոմի տեղակալ, 1943–45-ին՝ ԳՇ Ռազմ. ակադ-ի պետ: Աշխ-ները վերաբերում են ռազմ. տեսությանը և պատմության հարցերին:

ՇԱՊՈՇՆԻԿՈՎ, Եվգենի Իվանովիչ (ծ. 1942), ռուս. պետ. և ռազմ. գործիչ, ՌԴ ավիացիայի մարշալ (1991): 1987-ից՝ Գերմանիայում տեղակայված խորհրդ. ՌՕՈՒ հրամ., 1988-ից՝ ԽՍՀՄ պաշտպ-յան նախարարի 1-ին տեղակալ, 1991-ի օգոստից՝ ԽՍՀՄ պաշտպ-յան նախարար, 1991–93-ին՝ ԱՊՀ ՋՈՒ գլխ. հրամ., 1993-ի հունիս–սեպտ-ին՝ ՌԴ ԱԱԽ քարտուղար, 1995-ից՝ «Ավերոֆլոտ – Ռուսական միջազգ. ավիաուղիներ» ԲԸ գլխ. տնօրեն:

ՇԱՊՈՇՆԻԿՈՎ, Իլյա (Փափախյան Եղիա) Գալուստի (1895/96–1953), կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1952): 1925–35-ին՝ Դոնի Ռոստովի ռադիոյի, 1938–53-ին (ընդմիջումով)՝ ֆիլհարմոնիայի սիմֆ. նվագախմբերի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: Հեղինակ է օպերայի, 2 սիմֆոնիայի, դաշնամուրի 2 կոնցերտի, գործիք. պիեսների, ռոմանսների, «Նախիջևանյան էսքիզներ»-ի, «Երևանյան էսքիզներ»-ի և այլ գործերի:

ՇԱՊՈՇՆԻԿՈՎ, Վլադիմիր Նիկոլաևիչ (1884–1968), ռուս մանրէաբան, տեխ. մանրէաբանության հիմնադիրներից ԽՍՀՄ-ում: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1953): Աշխ-ները վերաբերում են միկրոօրգանիզմների ֆիզիոլոգիային: Հիմք է դրել կաթնաթթվի և ճարպաթթվի, ացետոնի, բութիլային սպիրտի և այլ արտադր-յունների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

ՇԱՊՈՇՆԻԿՈՎԱ, Լյուդմիլա Վիկտորովնա (1921–2003), ռուս. դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1991): 1944-ից՝ Մոսկվայի Մոսսովետի անվ. թատրոնի դերասանուհի (Մելանյա՝ Մ. Գորկու «Եգոր Բուլըչով», Եկատերինա կայսրուհի, Ժիվցովա՝ Լ. Գ. Զորինի «Արքայական որս», «Քաղվածք», ևն):

ՇԱՊՈՎԱԼՈՎ, Իգոր Ալեքսեևիչ (ծ. 1945), ռուս. բալետի արտիստ, բալետմայստեր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1985): 1963-ից՝ Պերմի Պ. Ի. Չայկովսկու անվ. ՕԲԹ-ի մենապարող (Տորեադոր՝ Ժ. Բիզե-Ռ. Շչեդրինի «Կարմեն-սյուիտ», Հանս՝ Ա. Ադանի «Ժիզել», ևն):

ՇԱՊՈՐԻՆ Յուրի (Գեորգի) Ալեքսանդրովիչ (1887–1966), ռուս. կոմպոզիտոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1954): Հեղինակ է «Դեկաբրիստներ» (1953) օպերայի, «Կուլիկովոյի դաշտում» (1939) սիմֆոնիա-կանտատի, «Ասք ռուսական հողի համար մղված ճակատամարտի մասին» (1944) և այլ օրատորիաների, սիմֆոնիայի (1932), ռոմանսների և այլ գործերի:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1946, 1952):

ՇԱՊՊ (Chappe) Կլոդ (1763–1805), ֆրանսիացի մեխանիկոս: Հայտնագործել է (1793) լուսազդանշան. (օպտիկ.) հեռագրությունը և կառուցել դրա առաջին գիծը Փարիզի և Լիլի միջև (1794):

ՇԱՊՈՒՀ I (ծ. թ. անհտ–273), Իրանի շահ՝ 243-ից՝ Սասանյանների հարստությունից: *Արտաշիր I*-ի որդին: Գրավել է Ատրպատականը, Գիլանը, Վրկանը ևն, 252/253-ին՝ Հայաստանը, 255-ին հռոմեացիներից՝ Դուրա Եվրոպոս ք–ը: 260-ին Եդեսիայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հաղթել է կայսր Վալերիանոսին ու գերել նրան: Ստացել է «արքայից արքա» տիտղոսը:

ՇԱՊՈՒՀ II ԵՐԿԱՐԱԿՅԱՑ (309–379), Իրանի շահ՝ 309-ից՝ Սասանյանների հարստությունից: Որմիզդ II-ի որդին: Պետ. իշխանությունն ամրապնդելու նպատակով բարեփոխել է զրադաշտականությունը: 338, 345, 350-ին պաշարել է Մծբինը, գրավել Սինգարան (345 և 360), Ամիդը (359) ևն: 350-ական թթ-ին պատերազմել է խիոնիտների, քուշանների և այլ ցեղերի դեմ: 364-ին պատերազմ է սկսել Հայաստանի դեմ, խաբեությամբ գերել է (367/368-ին) Հայոց արքա Արշակ II-ին: 368–369-ին գրավել ու ավերել է Հայաստանի քաղաքները, գերեվարել բազմահազար բնակիչների: 371-ին *Զիրավի ճակատամարտում* պարտություն է կրել հայ-հռոմ. զորքերից:

ՇԱՊՈՒՀ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, IX դ-ի վերջ–X դ-ի սկզբի պատմիչ: Շ. Բ. իր պատմ. երկը (Բագրատունիների, մասնավորապես՝ Աշոտ Ա–ի ժամանակաշրջանի պատմ. իրադարձությունների մասին) շարադրել է *Աշոտ Ա. Մեծ* թագավորի որդու՝ Դավիթ Բագրատունու պատվերով (մեզ չի հասել): Թյուրիմացաբար Շ. Բ–ուն է վերագրվել և նրա անունով հրատարակվել «Պատմութիւն Շապուհ Բագրատունւոյ» (1921) անանուն երկը, որի հեղինակին հետագայում պայմանականորեն անվանել են «Անանուն Զրուցագիր»:

ՇԱՊՈՒՀ ՊԱԲՄԻԿ (ծ. թ. անհտ–420), Հայաստանի դրածո թագավոր՝ 416-ից: *Հազկերտ I* արքայի թագաժառանգ որդին: Գահակալել է հայ նախարարների կամքին հակառակ, նպատակադրվել է վերացնել Արշակունիների թագավորությունը: Մսհամերձ հոր գահին տիրելու համար մեկնել է Տիզբոն. սպանվել է պալատ. դավադրությամբ:

ՇԱՌԱԼԻԵՎ, Բորիսլավ (1922–2002), բուլղար կինոռեժ.: ԲԺՀ ժող. արտիստ (1977): Նկարահանել է «Երգ մարդու մասին» (1954), «Ասպետն առանց զենք ու զրահի» (1966), «Մնաք բարով, ընկերներ» (1970), «Սպասում» (1973), «Հարված» (1982), «Բորիս I» (1984), «Պլյոնտեկ» (1991) և այլ ֆիլմեր:

ՇԱՌԱՉՈՂ ԳԱԶ, 2 ծավալ ջրածնի և 1 ծավալ թթվածնի խառնուրդ: Հրկիզելիս, տաքացնելիս, նույնիսկ ուժեղ լուսավորելիս պայթում է շառաչյունով (այստեղից՝ անվանումը): Երբեմն Շ. գ. են անվանում նաև գազ. այլ պայթուցիկ խառնուրդներ ($H_2 + Cl_2$, $2C_2H_2 + 5O_2$ ևն):

ՇԱՌԱՉՈՂ ՄՆԴԻԿ, սնդիկի ֆուլմինատ, հարուցող պայթուցիկ նյութ՝ $Hg(CNO)_2$: Սպիտակ կամ գորշ փոշի է: Պայթյունի ջերմությունը՝ 1,8 *ՄՋ/կգ*: Կիրառվում է հրապատիճ–ճայթիչներում:

ՇԱՌԱՉՈՂ ՕՁԵՐ (անգլ.՝ Crotalidae), բոժոժավոր օձեր, փոսագլուխների ընտանիքի թունավոր օձերի 2 սեռի անվանումը: Երկ.՝ մինչև 2,4 *մ*: Հայտնի է 31 տեսակ՝ հիմնականում Հս. Ամերիկայում: Պոչի ծայրին թեփուկներն առաջացնում են բոժոժ (զանգուլակ, այստեղից՝ անվանումը): Կծածը վտանգավոր է մարդու համար, 2 տեսակ գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՇԱՌԱՎԻԳ–ՎԵԿՏՈՐ, որոշակի սևեռված կետի (սովորաբար՝ կոորդինատների սկզբնակետի) նկատմամբ տարածության մեջ կամայական կետի դիրքը բնորոշող *վեկտոր*:

ՇԱՌԼ, (Charles) Ժակ Ալեքսանդր Սեզար (1746–1823), ֆրանսիացի ֆիզիկոս, գյուտարար: Փարիզի ԳԱ նախագահ (1816-ից): Հայտնաբերել է իդեալ. գազի՝ իր անունով հայտնի օրենքը: Կառուցել է օդապարիկ՝ առաջինն այն լցնելով ջրածնով:

ՇԱՌԼԵՐՈՒԱ, (Charleroi), ք. Բելգիայի հվ–արմ–ում: Բն.՝ 201 հզ. (2010): Խոշոր տրանսպորտ. հանգույց է:

ՇԱՌԼԻ ՕՐԵՆՔ, անփոփոխ զանգվածով և ծավալով իդեալ. գազը տաքացնելիս նրա ճնշումը աճում է գծայնորեն՝ $p_t = p_0(1 + \alpha t)$, որտեղ p_t-ն և p_0-ն գազի ճնշումներն են t և 0°C-ում, $\alpha = 1/_{273}$ K^{-1}: Հայտնաբերել է Ժ. *Շառլը* 1787-ին:

ՇԱՌՆՀՈՐՍՏ (Scharnhorst) Գերհարդ Յոհան (1755–1813), պրուս. բանակի գեն. (1807): 1807–11-ին գլխավորել է ռազմ. գե-

րատեսչությունը և ԳԾ-ն, Ա. Գնեյզենաուի հետ վերակազմել է պրուս. բանակը: 1813–ին՝ Գ. Լ. *Բյուխերի* բանակի շտաբի պետ:

ՇԱՌՈՅԱՆ Գարսևան Վանոյի (1906–2007), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1967), պրոֆ. (1969): Աշխ–ները վերաբերում են Խորհրդ. Հայաստանի 1920–30–ական թթ–ի ագրար. հարցերին:

ՇԱՌՈՅԱՆ Ռոլանդ Դանիելի (ծ. 1952), արձակագիր, լրագրող, խմբ.: ՖԿՀՊԻ պրոֆ. (1999): 1993–95–ին՝ «Նավասարդ», 1993–ից, միաժամանակ՝ *«Մարզաշխարհ»* թերթերի հիմնադիր–խմբ.: 1998–2003–ին՝ ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարար: Հեղինակ է «Շոգիլք» (2001), «Ամպշող արև» (2001), «Անսանձ գրաքանդակներ» (2011), «Հովն ընկավ» (2012) ակնարկների, պատմվածքների, վիպակների, մանկ. պատմվածքների ու հեքիաթների ժող–ների, «Աղավնիներից մինչև տեսադարաշրջան» (2009) մենագրության և այլ գործերի:

ՀԳՄ (1986), ՀԼԿԵՄ (1987) մրց–ներ, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2012):

ՇԱՌՈՆ (Charron) Պիեռ (1541–1603), ֆրանսիացի փիլ. և աստվածաբան: «Իմաստության մասին» (1601) աշխ–յան մեջ զարգացրել է գաղափարներ, որոնք մոտ էին Մ. *Մոնտենի* սկեպտիցիզմին:

ՇԱՍՍԻ (ֆրանս.՝ châssis), **ամրաշրջանակ**, 1. փոխադր., գղտ. և այլ մեքենաների մասերի համախումբ, որի միջոցով շարժիչի ճիգերը փոխանցվում են շարժասարքին՝ մեքենաների շարժման և նրանց կառավարման համար: 2. Ինքնաթիռի թռիչքավայրեջքային սարքավորում: Հիդրոինքնաթիռների համար որպես Շ. օգտագործում են իրանը կամ լողանները: 3. Մետաղաթիթեղից (օր.՝ ալյումինից) կամ մեկուսիչ նյութից (օր.՝ գետինաքսից) պատրաստած պանել, որի վրա ամրացվում են սարքերի դետալները (ռադիոընդունիչներ, ուղղիչներ ևն):

ՇԱՎԱՌ ՀՆԴԿԱԿԱՆ, **կաննա**, կանեազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 50 տեսակ՝ Ասիայի, Աֆրիկայի և Ամերիկայի արևադարձ. և մերձարևադարձ. շրջաններում: Բազմաթիվ երկրներում մշակում են որպես գեղազարդիչ բույս, կան նաև ուտելի տեսակներ:

ՇԱՎԱՐՇՅԱՆ Արշավիր Մեսրոպի (1884–1960), մանկավարժ: Պրոֆ. (1936): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1954): 1922–25–ին՝ Երևանի մանկավարժ. ինստ–ի 1–ին տնօրենը: 1943–48–ին՝ ՀՄՊԻ փոխտնօրենն: Հեղինակ է «Ղ. Աղայանը որպես մանկավարժ» (1941), «Իսահակ Հարությունյանը որպես մանկավարժ» (1953) աշխ–ների: Կազմել է «Հայ մանկավարժներ» (գիրք 1, 2, 1958, 1961) մենագրությունը:

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան:

ՇԱՎԹԵԼԻ Իոանե (XII դ–ի վերջ–XIII դ–ի սկիզբ), վրացի բանաստեղծ–ներբողագիր: Հայտնի է Շ–ու «Աբդուլ–Մեսսիա» («Քրիստոսի ստրուկը») պոեմը:

ՇԱՎԻՐԻՆ Բորիս Իվանովիչ (1902–1965), զենքի ռուս կոնստրուկտոր: Սոց. աշխ. հերոս (1945): Շ–ի ղեկավարությամբ ստեղծվել են ականանետի և սպառազինման այլ տեսակների նմուշներ:

ԽՍՀՄ Պետ. (1942, 1950, 1951), Լենինյան (1964) մրց–ներ:

ՇԱՎԼՈՎ (Schawlow) Արթուր Լեոնարդ (1921–1999), ամերիկացի ֆիզիկոս: Հիմնավորել է լազերի ստեղծման հնարավորությունը (1958, Չ. *Թաունսի* հետ): Առաջարկել է [Ա. Մ. *Պրոխորովից* և Ռ. Դիկեից (1916–1997) անկախ] լազերներում օգտագործել Ֆաբրի–Պերոյի ինտերֆերոչափը, նաև ***ատոմակը***՝ որպես աշխ. մարմին: Աշխ–ները վերաբերում են ռադիո– և օպտիկ. սպեկտրագրությանը, գերհաղորդականությանը: Նոբելյան մրց. (1981, Ն. *Բլոմբերգենի* հետ):

ՇԱՏ ԱԼ–ԱՐԱՔ, գետ Միջագետքի ցածրավայրում՝ Իրաքում և Իրանում: Երկ.՝ 195 *մ*, ավազանը՝ 1 մլն *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1500 *մ*^{3}/*վ*: Կազմավորվում է Տիգրիս և Եփրատ գետերի միախառնումից, թափվում է Պարսից ծոց: Նավարկելի է: Ծով. նավնգստ–ներն են Բասրան, Խորեմշեհրը, Աբադանը:

ՇԱՏԱԼԻՆ Ստանիսլավ Սերգեևիչ (1934–1997), ռուս տնտեսագետ: ՌԳԱ ակադ. (1987): Աշխ–ները վերաբերում են համակարգ. վերլուծության տեսությանը և մեթոդաբանությանը, որն օգտագործել են սոցիալ–տնտ. և գիտատեխ. առանձին խնդիրների լուծման համար: ԽՍՀՄ Պետ. մրց. (1968):

ՇԱՏԱԼՈՎ Վլադիմիր Ալեքսանդրովիչ (ծ. 1927), ռուս տիեզերագնաց–օդաչու, գեն–լեյտ.: ԽՄ հերոս (1968, 1969): Կատարել է 3 տիեզ. թռիչք (1968, 1969, 1971)՝ որպես տիեզերանավի հրամ. (ընդհ. ժամանակը՝ 9 օր 21 *ժ* 55 *ր*): Շ–ի անունով է կոչվել Լուսնի հակառակ երեսի խառնարաններից մեկը:

ՇԱՏԱԽ, **Ասպական**, գետ Հայկ. լ–աշխարհում, Բաթման (Քաղիրդ) գետի ձախ վտակը (Արմ. Տիգրիսի համակարգ): Երկ.՝ մոտ 70 *կմ*: Սկիզբ է առնում Խաչառաջ լ–շղթայի Սիմսար լ–ան հվ–արլ. լանջից: Մնումը խառն է, հորդանում է գարնանը:

ՇԱՏԱԽ, գվո Արմ. Հայաստանի Վանի նահանգ–ում: Ընդգրկել է ***Մոկք*** նահանգ–ի Արքայից (Մոկք Առանձնակ), Ջերմաձոր և Իշայր, ***Վասպուրական*** նահանգ–ի Բուժունիք, մասամբ՝ Անձևացիք գվո–ները: Կենտրոնն էր Շատախ կամ Թաղ ավանը: XX դ–ի սկզբին Շ–ի 95 գ–ից 57–ը հայաբնակ էր, մնացածը՝ քրդաբնակ: Գվո–ի հայությունն իր կիսանկախությունը պահպանել է մինչև 1870–ական թթ., երբ նշանակվել է քուրդ գավառապետ: 1896–ին և հատկապես 1915–ին կազմակերպված պաշտպ–յան շնորհիվ նրանք կարողացել են փրկվել թուրք. կոտորածից (տես ***Շատախի հերոսամարտ 1915***): Ռուս. զորքերի հուլիսյան նահանջի պատճառով Շ–ի հայերը նույնպես տեղահանվել են և ստիպված եկել են Արլ. Հայաստան:

ՇԱՏԱԽԻ ԲԱՐԲԱՌ, հայ–ի «կը» ճյուղի բարբառ: Խոսվել է Արմ. Հայաստանի Շատախ գ–ում և հարակից շրջաններում: Ունի երկաստիճան ձայնեղազուրկ (պ–փ) բաղաձայն. համակարգ:

ՇԱՏԱԽԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Հայկ. (Արլ.) Տավրոսի լ–շղթաներից, Սասուն գվո–ում: Սկսվում է Սիմսար լ–շղթայից և ձգվում հվ–արմ (60 *կմ*)՝ Սասնաջուր և Շատախ գետերի միջև: Բարձր.՝ մինչև 2500 *մ*: Լանջերն անտառապատ են, վերին գոտում տարածված են լեռն. մարգագետինները:

ՇԱՏԱԽԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏ 1915, Վանի նահանգ–ի *Շատախ* գվո–ի հայ բնակչության ինքնապաշտպ. մարտերը թուրք. ջարդարարների դեմ: Դիմադրությունն սկսվել է ապրիլի 3–ին: Կազմվել է ինքնապաշտպ–յան զինվ. մարմին (Տիգրան Բաղդասարյան, Ազատ Սիմոնյան, Սամվել Մեսրոպյան և ուր.): Ապրիլի 4–ին թուրքերը գրավել են մի քանի գյուղեր և պաշարել Թաղը: Սակայն հայերը շարունակել են կռիվը և առաջացող ռուս. զորքերի ահից թուրքերը նահանջել են: Մայիսի 12–ին ռուս. զորքերի շարքերում գործող կամավորները Դրոյի ղեկավարությամբ մտել են Թաղ և օգնել նրանց Արլ. Հայաստան տեղափոխվելուն:

ՇԱՏԱՆԽՅԱՆ Մեսրոպ Պետրոսի (ծ. 1973), սրտավիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (2009): Աշխ–ները վերաբերում են խոզի և հորթի սրտապարկից պատրաստված՝ մարդու սրտի ամբողջ. փականային համալիրնեի կիրառմանը՝ սրտի բնածին և ձեռքբերովի արատների վիրահատությունների ժամանակ: ՀՀ նախագահի մրց. (2005):

ՇԱՏԲԵՐԴ, հայկ. հնագույն ամրոց–բնակավայր Գուգարք նահանգ–ի ***Կղարջք*** գվո–ում: Արաբ. տիրապետության ժամանակ ամայացել ու կործանվել է: Վերաշինվել է X–XI դդ–ում, իսկ մինչև X դ–ի ավարտը հայր Սոֆրոնը վերականգնել է Շ–ի հայկ. եկեղեցին: Այնտեղ թարգմանել, արտագրել և նկարազարդել են հայ., հուն., վրաց. ձեռագրեր, գրել նորերը: Շ–ի հայությունը XX դ–ի 1–ին տասնամյակներում տեղահանվել է:

ՇԱՏԵԼԵՆ Միխայիլ Անդրեևիչ (1866–1957), ռուս էլեկտրատեխնիկ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1931): Սոց. աշխ. հերոս (1956): ԳՈԷԼՌՈ–ի պլանի կազմման մասնակիցներից: Աշխ–ները վերաբերում են էլեկտրատեխնիկային, լուսատեխնիկային, տեխնիկայի պատմությանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

ՇԱՏԻՆԻ ՎԱՆՔ, **Շատիկ անապատ**, X դ–ի ճարտ. համալիր ՀՀ Վայոց ձորի մարզի Շատին գ–ից մոտ 4 *կմ* արլ.՝ Եղեգիս գետի ձախափնյա լեռան լանջին: Հիմնադրվել է 929–ին: Պահպանվել են այդ ժամանակի խաչքարեր և արձանագրություններ: Ներկայի Սբ Սիոն բազիլիկը (1655) վանքի պարսպապատ տարածքի կենտրոնում է: Արմ–ում եղել է եռանավար գավիթ–սրահ: Հվ. պարսպապատին կից են բնակելի կացարաններ, տնտ. շինություններ:

ՇԱՏՈԲՐԻԱՆ (Châteaubriand) Ֆրանսուա Ռենե դը վիկոնտ (1768–1848), ֆրանսիացի գրող, քաղ. գործիչ, դիվանագետ: Ռոմանտիզմի նախակարապետը ֆրանս. գրկ–յան մեջ: Արժեքավոր է Շ–ի «Քրիստոնեության հանճարը» (հրտ.՝ 1802, հայ.՝ 2003) խոհափիլ. աշխ–ը: Հեղինակ է նաև «Աթալա» (1801, հայ.՝ 1858), «Ռընե» (1802, հայ.՝ 1858) վիպակների, «Անդրշիրիմյան հուշեր» (հրտ.՝ 1848–50) բազմահատոր հուշագրության, որը Շ–ի գեղ. ու փիլ. հայացքների հանրագումարն է:

ՇԱՏՄԿԻ Նիկոլայ Սերգեևիչ (1895–1960), ռուս երկրաբան, երկրբ. կազմավորումների մասին տեսությունների հիմնադիրներից: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1953): Աշխ–ները վերաբերում են հնագույն պլատֆորմների համեմատ. տեկտոնիկայի հարցերին: Կազմել է ԽՍՀՄ և Եվրասիայի տեկտ. 1–ին քարտեզները: ԽՍՀՄ Պետ. (1946), Լենինյան (1958) մրց–ներ:

ՇԱՏՎՈՐՅԱՆ Գուրգեն Իսահակի (1919–1975), ըմբիշ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1953): Հուն–հոռմ. ոճի ըմբշամարտի ԽՍՀՄ (1950, 1952), աշխարհի (1953) չեմպիոն:

ՇԱՏՎՈՐՅԱՆ Լեռնիդ Գեորգիի (ծ. 1944), ՌԴ բանակի գեն–լեյտ. (1994): ՌԴ վաստ. շինարար (1996): Պատասխանատու պաշ–

տոններ է վարել Հյուսիսկովկաս. ռազմ. օկրուգում. 1990–ից՝ շինվարչության պետ, 1992–2002–ին՝ հրամ–ի տեղակալ:

ՇԱՏՐՈՎ (Մարշակ) Միխայիլ Ֆիլիպովիչ (1932–2010), ռուս. դրամատուրգ: Հեղինակ է «Հուլիսի վեցը» (բեմ.՝ 1964, կինոնկար՝ 1968), «Օգոստոսի երեսուն: Բոլշևիկներ» (1968), «Կապույտ ձիեր կարմիր խոտի վրա» (1979), «Այդպես կհաղթենք» (բեմ.՝ 1981), «Վաղվա եղանակը» (1974), «Կարող է պատահել» (1993) և այլ պիեսների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1983):

ՇԱՏՐՈՎԱ Ելենա Միտրոֆանովնա (1892–1976), ռուս. դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1968): 1918–ից՝ Մոսկվայի Կորշի, 1932–ից՝ Փոքր թատրոնների դերասանուհի (Կուպավինա՝ Ա. Ն. Օստրովսկու «Գայլեր և ոչխարներ», Աննա Անդրեևնա՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1948, 1949):

ՇԱՐԱ, Շարա Հայկազն (հավանաբար՝ պարսկ. շերե – որկրամոլ), Հայկի սերնդից, Արամայիս նահապետի որդին, հայտնի էր շատակերությամբ: Հայրը Շ–ին բնակության է ուղարկել հացառատ *Շիրակի* գվո, որպեսզի այնտեղ հագուրդ դա որկրամոլությանը: Ըստ ավանդության՝ այդ գվո–ի անվանադիր նախնին է: Շ–ի անունով է կոչվել *Շարայի լեռը*:

ՇԱՐԱԿԱՆ, հայ միջնադար. հոգևոր երգ, օրհներգություն, երգում են եկեղեց. տոներին: Յուրաքանչյուր տուն ունի երգերի առանձին շարք, որից էլ՝ անվանումը: Առաջին շարականագիրներն են Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը, Մովսես Խորենացին: Շ–ի զարգացմանը նպաստել են Բարսեղ Ճոնը, Ստեփանոս Սյունեցին, Ներսես Շնորհալին, Անանիա Շիրակացին, Սահակդուխտը և ուր.: Տես նաև *Շարակնոց*:

«ՇԱՐԱԿԱՆ», ՀՀ հանր. ռադիոյի հնագույն երաժշտության անսամբլ: Հիմնադրվել է 1991–ին Երևանում: Գեղ. ղեկ. և դիրիժոր՝ *Դանիել Երաժիշտ*: Երկացանկում՝ հայկ. միջնադար. մեղեդիների, շարականների, հոգևոր ու աշխարհիկ երգերի մշակումներ, Կոմիտասի, Մ. Եկմալյանի, արևմտաեվրոպացի կոմպոզիտորների գործեր:

ՇԱՐԱԿՆՈՑ, *շարականների* ժող., դասավորությունը՝ ըստ եկեղեցու տարեկան տոների կամ ձայնեղանակների: Կարգավորմանն ու հարստացմանը մեծապես նպաստել է *Ներսես Շնորհալին* («Ձայնքաշ շարականներ», ժող.): Պահպանված հնագույն խազագիր ձեռագիրը Շ. թվագրվում է XIII դ–ով, տպագրվել է 1664–ին (Ամստերդամ), *նոր հայկական ձայնագրությամբ*՝ 1875–ին (Վաղարշապատ, կազմ.՝ Նիկողայոս *Թաշճյան*), եվրոպ. նոտագրությամբ՝ 1954–76–ին (Վենետիկ, խազագրող՝ Ղևոնդ *Տայան*):

ՇԱՐԱԿՅԱԿԱՆ ՀՅՈՒՍՎԱԾՔ, հյուսվածքի տեսակ՝ կազմված բջիջներից (հիմնականում՝ ֆիբրոբլաստներից), թելիկներից և հիմն. նյութից: Կատարում է հենարանային, սնուցող. և պաշտպ. ֆունկցիաներ: Տարբերում են բուն (ենթամաշկ. ճարպաբջջանք, ջլեր, կապաններ), ոսկր., աճառ., ցանցանման և ճարպ. Շ. հ–ներ: Շ. հ. են նաև արյան ու ավշի հյուսվածքները:

ՇԱՐԱՄԲԵՅԱՆ Հովհաննես Միհրանի (1926–1986), նկարիչ: ՀԽՍՀ վաստ. նկարիչ (1967): Ակվ. վաստ. գործիչ (1984): 1947–ին Դիլիջանում հիմնադրել է նկարչ. ստուդիա (1970–ից՝ նկարչ. դպրոց), 1958–ին՝ երկրագիտ. թանգարանին կից կիրառ. արվ–ի թանգարան (1979–ից՝ Հայաստանի ժող. արվ–ի թանգարանի մասնաճյուղ): 1978–86–ին՝ Հայաստանի ժող. արվ–ի պետ. թանգարանի տնօրեն: Հեղինակ է «Հին բակ Դիլիջանում» (1954), «Հովիվ Պողոսյանի դիմանկարը» (1956), «Հիշողություն հին Երևանից» (1968), «Չորացած ծաղիկներ» (1975) և այլ գործերի: 2008–ին Շ–ի անունով է կոչվել *Հայաստանի ժողովրդական արվեստի կենտրոնը*:

ՇԱՐԱՅԻ ԼԵՌ, Սուրբ Հովհաննես, Կողգաթ, հրաբխ. լ–գագաթ Արագածի և Փամբակի լ–շղթայի միջև՝ ՀՀ Շիրակի մարզում: Բարձր.՝ 2505 *մ*, հիմքի շրջագիծը՝ մոտ 5 *կմ*: Լանդշաֆտը լ–տափաստան. է: Կոչվել է *Շարայի* անունով:

ՇԱՐԱՆԵՎԻՉ Իզիդոր (Իսիդոր) Իվանովիչ (1829–1901), ուկրաինացի պատմաբան, հնագետ: Կրակովի ԳԱ անդամ (1873): Աշխ–ները վերաբերում են Արմ. Ուկրաինայի միջնադար. պատմությանը: «Հին Լվովը» (1862) մենագրության մեջ փաստել է, որ հայերն այնտեղ հաստատվել են նրա հիմնադրումից (XIII դ–ի կես) անմիջապես հետո, զբաղվել առևտրով, ծառայել իշխանի պահակազորում, մասնակցել քաղաքի կառավարմանը: «Հայերը Ռուսիայում և Պոդոլիեում» (1868) աշխ–յան մեջ վերլուծել է հայերի՝ Ուկրաինա արտագաղթի պատճառները:

ՇԱՐԱՆՏԱ (Charente), գետ Արմ. Ֆրանսիայում: Երկ.՝ 360 *կմ*, ավազանը՝ 10 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 140 *մ*^{3}/*վ*: Թափվում է Ատլանտ. օվկ–ի Բիսկայան ծոցը: Նավարկելի է ներքին հոսանքում: Ակունքի մոտ է Ռոշֆոր նվինգստ–ը:

ՇԱՐԱՖՅԱՆ Վաչե Ռոբերտի (ծ. 1966), կոմպոզիտոր: Հեղինակ է «Արգար արքա» օպերայի, «Երկրորդ լուսին» բալետի, սիմֆոնիայի (1990), «Կոնցերտ–սերենադի» (ջութակ և լարավոր գործիքներ), կոնցերտի (սաքսոֆոն, դաշնամուր և լարավոր գործիքներ), «Տարվա եղանակներ» (12 գործիք), «Կոնչերտո գրոսո», «Վահագնի ծնունդը» (սոպրանոյի և ջութակի համար) երկերի, հոգևոր երգերի մշակումների:

ՇԱՐԲԱՔՅԱՆ Գրիգոր (Գիգո) Միքայելի (1884–1942), բեմականկարիչ, գեղանկարիչ: ՎԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1936), 1921–ից՝ Թիֆլիսի հայկ. դրամատիկ. թատրոնի գլխ. նկարիչ: Ձևավորել է Ե. Չարենցի «Կապկազ թամաշա», Գ. Սունդուկյանի «Պեպո» (երկուսն էլ՝ 1926), Մ. Գորկու «Հատակում» (1932), Վ. Շեքսպիրի «Օթելլո» (1933) թատեր., «Ալմաստ» (1932) օպեր. և այլ ներկայացումներ: Հեղինակ է նաև կենցաղ. թեմաներով կտավների («Շեյթան բազարը», «Ղեյնոբա»), բնանկարների («Սևանի կղզին», «Ռիցա լիճը») և այլ գործերի, «Խալխի նոքար Սայաթ–Նովա» պիեսի (բեմ.՝ 1927, Կիրովական):

ՇԱՐԴԵՆ (Chardin) Ժան Բատիստ Սիմեոն (1699–1779), ֆրանսիացի գեղանկարիչ: Հեղինակ է նատյուրմորտների («Նատյուրմորտ ծխամորճով», 1737, ևն), կենցաղ. պատկերների («Պղնձե բաք», մոտ 1733), դիմանկարների («Լվացարարուհի», 1733, «Ինքնադիմանկար», 1771, ևն), որոնց բնորոշ են քնարականությունը, լույսի և օդի ճշգրիտ փոխանցումը, առարկաների նյութականացումը:

ՇԱՐԹ (Հարությունյան Սարգիս, 1927–2011), նկարիչ: Հեղինակ է ձևի և լույսի վերարտադր–յամբ բանաստեղծ. ցայտուն կերպարների («Ճակնդեղ հավաքողը», 1956, «Ծխամորճով երիտասարդ ձկնորսը», 1960, «Նստած կինը», 1963, «Դեյր էզ Զորում», 1963–64, «Կանայք գաղթի ճանապարհին», 1968, «Հայկական եկեղեցում», 1978) ևն:

Ներբուրգի (1962), Բեյրութի (1964) միջազգ., Տավեռնի (1967), Բրետանի (1967) մրց–ներ:

ՇԱՐԺ (ֆրանս.՝ charge – չափազանցնել), երգիծ. կամ մեղմ հումորով ստեղծված պատկեր (սովորաբար՝ դիմապատկերներ), որտեղ պահպանելով արտաքին նմանությունը՝ ծաղրանկարի ոճով ձևափոխված կամ ընդգծված են մարդու առավել բնորոշ գծերը: Շ–ի հեղինակներ են Ս. Արուտչյանը, Վ. Աճեմյանը, Գ. Յաբալյանը և ուր.:

ՇԱՐԺԱԹԵՎ, շուռտվիկասողան. մեխանիզմի մեքենամաս, որը մխոցի կամ սողանի համընթաց շարժումը փոխարկում է շուռտվիկի կամ ծնկաձև լիսեռի պտտ. շարժման:

ՇԱՐԺԱՍԱՆԴՈՒՂՔ, *էսկալատոր* (անգլ.՝ escalator, < լատ. scala – սանդուղք), հորիզոնի նկատմամբ 30–35° թեքությամբ շարժվող սանդուղքի տեսքով ամբարձիչ–փոխադր. մեքենա՝ մարդկանց հարթակի մի մակարդակից մյուսը տեղափոխելու համար: Շ–ի աստիճաններն ամրացված են անվերջ շղթային, որը ռեդուկտորի միջոցով շարժման մեջ է դրվում էլեկտրաշարժիչով: Շ–ները օգտագործում են մետրոպոլիտեններում, կայարաններում, խոշոր խանութներում ևն:

ՇԱՐԺԱՍԱՐՔ, շարժիչի կամ էներգիայի այլ աղբյուրի աշխ–ը փոխադրամիջոցների տեղաշարժման աշխ–ների փոխակերպման սարքավորում: Տեղաշարժման Շ–եր են՝ ցամաքով՝ անիվները, թրթուրները ևն, ջրի վրայով՝ պտուտակները, ջրնետները ևն, օդով՝ պտուտակները, ռեակտիվ ծայրապանակները ևն:

ՇԱՐԺԻՉ, էներգաուժային մեքենա, որը էներգիայի որևէ տեսակ փոխարկում է մեխ. աշխ–ի: Շ–ները դասակարգում են առաջնայինի և երկրորդայինի: Առաջնայինները (հիդրոտուրբիններ, նաշ–ներ ևն) բնական պաշարների (ջրեր, միջուկ. վառելանյութ ևն) էներգիան անմիջականորեն փոխարկում են մեխ. էներգիայի: Երկրորդայինները (օր.՝ էլ.) էներգիան ստանում են առաջնայինից, էներգիայի փոխակերպիչներից և կուտակիչներից (օր.՝ արևային մարտկոցներից, զսպանակ. մեխանիզմներից ևն):

ՇԱՐԺՄԱՆ ՔԱՆԱԿ, *իմպուլս*, 1 մեխ. շարժման վեկտոր. չափ: $\vec{v}$ արագությամբ շարժվող m զանգվածով նյութ. կետի Շ. ք.՝ $\vec{p} = m\vec{v}$, և փոփոխվում է $\vec{F}$ ուժի ազդեցությամբ՝ $d\vec{p}/dt = \vec{F}$ (դաս. մեխանիկայի հիմն. օրենքը): Շ. ք–ով օժտված են մատերիայի բոլոր տեսակները, այդ թվում՝ էլեկտրամագնիս. և ձգող. դաշտերը: Համակարգի Շ. ք. հավասար է այդ համակարգի բոլոր կետերի Շ. ք–ների երկրչփ. գումարին կամ ամբողջ համակարգի զանգվածի և իներցիայի կենտրոնի արագության վեկտորի արտադրյալին:

ՇԱՐԺՄԱՆ ՔԱՆԱԿԻ ՄՈՄԵՆՏ, կինետիկական մոմենտ, իմպուլսի մոմենտ, մեխ. շարժման վեկտոր. դինամիկ. չափ: Կոորդինատների անշարժ համակարգի նկատմամբ նյութ. կետի Շ. ք. մ.՝ $\vec{k} = \vec{r} \cdot m\vec{v}$, որտեղ m–ը կետի զանգվածն է, $\vec{r}$–ը՝ նրա շառավիղ–վեկտորը, $\vec{v}$–ն՝ արագությունը: Նյութ. կետերի համակարգի Շ. ք. մ. այդ

համակարգի բոլոր կետերի Շ. ք. մ-ների երկրչփ. գումարն է: O կետի նկատմամբ համընթաց շարժվող պինդ մարմնի Շ. ք. մ. որոշվում է մարմնի զանգվածի կենտրոնի ակնթարթ. դիրքով և արագությամբ՝ $\vec{k} = \vec{r_c} \cdot m\vec{v_c}$, որտեղ m-ը մարմնի զանգվածն է, $\vec{r_c}$-ն՝ զանգվածի կենտրոնի շառավիղ-վեկտորը, $\vec{v_c}$-ն՝ զանգվածի կենտրոնի արագությունը:

ՇԱՐԺՄԱՆ ՔԱՆԱԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՕՐԵՆՔ, հիմն. *պահպանման օրենքներից*, որի համաձայն՝ փակ մեխ. համակարգի մասնիկների շարժման քանակների երկրչփ. գումարը հաստատուն մեծություն է: Այս օրենքից բխում է, որ ներքին ուժերը չեն կարող փոփոխել համակարգի գումար. շարժման քանակը, թեև առանձին մասնիկների շարժման քանակը կարող է փոփոխվել այդ ուժերի ազդեցությամբ:

ՇԱՐԺՈՒՄ (փիլ-յան մեջ), մատերիայի գոյության եղանակը, լայն առումով՝ առհասարակ փոփոխություն, օբյեկտների կամայական փոխազդեցություն: Շ. բացարձակի և հարաբերականի, կայունի և փոփոխականի, անընդհատի և ընդհատի միասնությունն է: Շ-ման հակասականությունը բացահայտվել է դեռևս Հին աշխարհում: *Զենոն Էլեացին* է առաջադրել Շ-ման հակասությանը վերաբերող խնդիրներ (տես *Ապորիա*):

«ՇԱՐԺՈՒՄ», ազգ., քաղ., գր. եռօրյա թերթ (1898–1907, Վառնա): ՀՅԴ հրտ-յուն: Խմբ-տնօրեններ՝ Վարդան Մնշտուճյան, Երուխան, Վարդ Պատրիկյան:

«ՇԱՐԺՈՒՄ», ազգ., հաս., գր. շաբաթաթերթ (1937–91, Բուենոս Այրես՝ հայ. և իսպ.): ՄԴՀԿ պաշտոնաթերթ: Խմբ-ներ՝ Տաճատ Գնթունի, Երվանդ Մխիթարյան, Միհրան Ուզունյան, Աբրահամ Էոլմեսեկյան, Վահան Զեյթունցյան, Աբրահամ Քրաջյան, Հակոբ Մարկոսյան, Ալբերտ Քեոսեյան, Աբրահամ Գարատանյան, Կիրակոս Աջապահյան, Նազարեթ Կուժնունի, Վարուժան Ածեմյան, Սամվել Սարգիսյան:

ՇԱՐԺՈՒՆԱԿ ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՏԱՐՐԵՐ, ԴՆԹ-ի հատվածներ, որոնք կարող են տեղաշարժվել բջջի *գենոմում* կամ գենոմների միջև: Պարունակում են ֆերմենտների գեներ՝ նրանց տեղաշարժման (տրանսպոզիցիա) համար: Ներկառուցվելով քրոմոսոմների տարբեր հատվածներում՝ Շ. գ. տ. փոխում են գենետիկ ակտիվությունը, հանգեցնում տարբեր մուտացիաների: Էուկարիոտների Շ. գ. տ. հաճախ կոչվում են նաև տրանսպոզոններ:

ՇԱՐԻ (Chari), գետ Կենտր. Աֆրիկայում (ԿԱՀ-ում, Չադում և Կամերունում): Ձևավորվում է Ուամ և Գրիբնիգի գետերի միախառնումից, թափվում Չադ լիճը: Երկ.՝ 1450 *մ*, ավազանը՝ 700 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1230 *մ*^{3}/*վ*: Հիմն. վտակը՝ Լոգոնն: Նավարկելի է Բատանգաֆո ք-ից մինչև Ուամ գետը (գետաբերանից 860 *կմ* և ավելի): Կա ձկնորսություն:

ՇԱՐԻԱԹ (արաբ.՝ շարիա – բառացի՝ ճիշտ ուղի), իսլամի կրոն. և իրավ. նորմերի ժող.: Աշակվել է Արաբ. խալիֆությունում VII–XII դդ-ում: Մահմեդականության մեջ համարվում է աստված. կարգի «հավերժական և անփոփոխ» դրսևորում:

ՇԱՐԻԱՆԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Հայկ. հրաբխ. բարձրավանդակում՝ Ալաշկերտի դաշտի և Դալաոի գոգհովտի միջև: Երկ.՝ 80 *կմ*, լայն.՝ 12–20 *կմ*, բարձր.՝ 2300 *մ*-ից (արևում) մինչև 3040 *մ* (արմ-ում): Տարածված են չոր տափաստան. և լ-մարգագետն. լանդշաֆտները:

ՇԱՐԻՄԱՆՅԱՆ Սեդրակ Սիմոնի (1898–1989), վիրաբույժ: ՀԽՍՀ-ում նյարդավիրաբուժության հիմնադիրներից: Բժշկ. գիտ. դ-ր (1938), պրոֆ. (1938): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1958): Աշխ-ները վերաբերում են ընդհ. վիրաբուժության, նյարդավիրաբուժության, անհետաձգելի վիրաբուժ. օգնության և ՀԽՍՀ-ում տեղաամարակ. խպիպի հարցերին: Կազմել է ՀԽՍՀ-ում խպիպի տարածվածության քարտեզ:

ՀԽՍՀ ԱՆ գլխ. վիրաբույժ (1949–54), Վիրաբույժների ընկ-յան պատվ. նախագահ (1987):

ՇԱՐԻՖ Օմար (Շալխուբ Միշել, 1932–2015), եգիպտացի կինոդերասան: Առաջին դերը 1954-ին «Դժոխքի երկինք» (խորհրդ. էկրանին՝ «Պայքար հովտում») ֆիլմում է: 1960-ական թթ-ից նկարահանվել է Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում («Լոուրենս Արաբացի», «Ծիծաղելի աղջիկը», «Դոկտոր Ժիվագո», «Արյունակցական կապ», «Հեռավոր վրաններ», «Չար ոգիներ», նաև Անրի *Վեռնոյի* «Մայրիկ», ևն):

ՇԱՐԻՖՈՒԴԴԻՆ (Sjarifuddin) Ամիր (1907–1948), Ինդոնեզիայի վարչապետ՝ 1947-ի հուլիս–1948-ի հունվ.: 1945–48-ին՝ Սոց. կուս-յան նախագահ, փոխնախագահ: Մադիունյան ապստամբությունից հետո գնդակահարվել է:

ՇԱՐՄԱ Շանկար Դայալ (1918–1999), Հնդկաստանի 9-րդ նախագահը՝ 1992–97-ին: 1968–77-ին՝ «Հնդկաստանի ազգային կոնգրես» կուս-յան գլխ. քարտուղար: 1986–87-ին՝ նահանգապետ: 1987-ից՝ Հնդկաստանի փոխնախագահ:

ՇԱՐՄԱ ՌԱՔԵՇ (ծ. 1949), հնդիկ տիեզերագնաց, մայոր: ԽՄ հերոս (1984): Հնդկաստանի Հանրապետության առաջին քաղաքացին, որը թռել է տիեզերք՝ «Սոյուզ Տ-10, -11» տիեզերանավերով և «Սալյուտ 7» տիեզերակայանով (1984-ի ապրիլ):

ՇԱՐՄԱԶԱՆՈՎ Էդուարդ Հովսեփի (ծ. 1975), քաղ. գործիչ: Մանակավարժ. գիտ. թեկնածու (2007): ՀՀ Ազ փոխնախագահ (2011-ի դեկտ-ից): ՀՀԿ մամուլի խոսնակ (2011): Հեղինակ է «Գարեգին Նժդեհը և ռազմական մանկավարժության հիմնահարցերը» աշխ-յան: ՀՀ «Միխիթար Գոշ» մեդալ (2015), ԱՊՀ միջխորհրդարան. վեհաժողովի «Համագործակցություն» շքանշան (2015), Ֆրիտյոֆ Նանսեն հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2009):

ՇԱՐՄԱՆԿԱ (գերմ.՝ «Scharmante Katharine…» – «Սքանչելի Կատարին…» երգի սկզբնաբառերից), մեխ. փողային երաժշտ. գործիք՝ առանց ստեղնաշարի, ոչ մեծ շարժ. երգեհոնի ձևով: Տարածվել է Եվրոպայում XVII դ-ի վերջին, դարձել թափառ. երաժիշտների գործիքը:

ՇԱՐՈԼԵ (ֆրանս.՝ Charolaise), տավարի մսատու ցեղ: Ստացվել է XVIII դ-ում Ֆրանսիայի Շարոլե (Charolais) շրջանում՝ խայտաբղետ լեռն. տավարի բարելավման միջոցով: Ցուլերի կ. զ.՝ 1000–1200 *կգ*, կովերինը՝ 700–800 *կգ*: ՀՀ ներմուծվել է 1990-ական թթ-ին՝ գիտաարտադր. փորձարկման նպատակով:

ՇԱՐՊ (Sharp) Ֆիլիպ (ծ. 1944), ամերիկացի մոլ. կենսաբան: Բացահայտել է (Ռ. *Ռոբերտսի* հետ միաժամանակ և նրանից անկախ) գենի ընդհատուն (էկզոն-ինտրոնային) կառուցվածքը: Նոբելյան մրց. (1993, Ռ. Ռոբերտսի հետ):

ՇԱՐՊԱԿ (Charpak) Ժորժ (1924–2010), ֆրանսիացի ֆիզիկոս: Ստեղծել է բազմամետաղալար համեմատական խցիկը և մասնիկների այլ *դետեկտորներ*: Նոբելյան մրց. (1992):

ՇԱՐՊԱՆՏԻԵ (Charpentier) Գյուստավ (1860–1956), ֆրանսիացի կոմպոզիտոր: Զարգացրել է ֆրանս. քնար. օպերայի և երաժշտ. *վերիզմի* ավանդույթները: Հեղինակ է օպերաների («Լուիզ», 1900), կանտատների, զանգված. ժող. տոնախմբությունների համար երաժշտության ևն:

ՇԱՐՊԵՅ, մոլեսների խմբի շների ցեղ: Բուծվել է Չինաստանում: Հավաք մարմնով, աշխույժ, միջին չափի շուն է՝ կարճ ցցամազերով մորթիով: Բնորոշ են լայն դունչը, հաստ, պինդ վերին շրթունքը, ճակատի, մնդավի և մեջքի ծալքերը, ձևավոր քայլվածքը: Ընկերակից շուն է:

ՇԱՐՏՐ, Շարթր (Chartres), ք. Ֆրանսիայում՝ Էր գետի ափին, Էր և Լուար դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 144 հզ. (2010):

ՇԱՐՏՐՅԱՆ ԴՊՐՈՑ, միջնադար. փիլ. դպրոց, գիտ-յան և լուսավորության խոշոր կենտրոն Շարտր ք-ում (Ֆրանսիա): Զգալի ազդեցություն է ունեցել եվրոպ. փիլ. մտքի վրա: Նշանավոր ներկայացուցիչներից էին *Բեռնարդ Շարտրացին*, *Գիլոմ Կոնշացին*, Հովհան Սոլսբերցին, Ադելարդ Բաթացին, *Ժիլբեր Պոռետացին* և ուր.: Շ. դ-ի մտածողները հակադրվել են կաթոլիկ եկեղեցու պաշտոնականացրած արիստոտելականությանը և հետևել *Պլատոնի* ուսմունքին, հարել չափավոր ռեալիզմին:

ՇԱՐՈՒԻ, գվո *Այրարատ*՝ նինգ-ում՝ Երասխի Արփա վտակի ստորին ավազանում՝ *Շարուրի դաշտում*: Մինչև V դ. եղել է արքունի կալված: Մմբատ Ա Բագրատունին պարգևել է Սյունյաց իշխանությանը: Պարսկ. տիրապետության շրջանում մտել է Նախիջևանի խանության մեջ, Արլ. Հայաստանը Ռուս. կայսրությանը միացվելուց (1828) հետո՝ *Հայկական մարզի*, ապա՝ Երևանի նինգ-ի մեջ: 1875-ից Վայոց ձորի հետ կազմել է Շարուր-Դարալագյազի գվո-ը: Այժմ Նախիջևանի ԻՀ (Ադրբեջան) կազմում է:

ՇԱՐՈՒՐԻ ԴԱՇՏ, Շարուրի հարթավայր, Հայկ. լ-աշխարհում՝ Մերձարաքսյան հարթավայրի հս-արմ-ում՝ Նախիջևանի ԻՀ-ում (Ադրբեջան)՝ Արփա գետն Արաքսին միախառնվելու շրջանում: Հս-ից և արլ-ից սահմանափակված է Ուրծի և Վայքի լ-շղթաներով, արմ-ից՝ Արաքս գետով: Հվ-արլ-ում միանում է Նախիջևանի հարթավայրին: Մակերևույթը հարթ է, մինչև 800 *մ* միջին բարձր-յամբ և դեպի հվ-արմ.՝ թույլ թեքությամբ: Զբաղվում են այգեգործությամբ, պտղաբուծությամբ և ծխախոտի մշակությամբ:

ՇԱՐՈՒԽՅԱՆ Ալբերտ Սրապիոնի (1931–2007), գրականագետ-բնագրագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1973), պրոֆ. (1976): Հեղինակ է «Սրբուհի Տյուսաբ. կյանքը և ստեղծագործությունը» (1963), «Պետրոս Դուրյան. կյանքը և գործը» (1972), «Միսաք Մեծարենց» (1983), «Գրիգոր Զոհրապի կյանքի ու գործունեության տարեգրություն» (1996) և այլ աշխ-ների: Շ-ի աշխատասիրությամբ լույս են տեսել «Միսաք Մեծարենցը և Դանիել Վարուժանը ժամանակակիցների հուշերում» (1986) և այլ գրքեր:

ՇԱՐՓ (Sharpe) Ուիլյամ Ֆորսայթ (ծ. 1934), ամերիկացի տնտեսագետ: Աշխ-ները վերաբերում են ֆինանսների տեսությանն ու ներդրումներին: Նոբելյան մրց. (1990, Հ. *Մարկովիցի* և Մ. *Միլլերի* հետ):

ՇԱՐՔ, անվերջ Շ. հետևյալ արտահայտությունն է՝

$$a_1 + a_2 + \cdots + a_n + \cdots \sum_{k=1}^{\infty} a_k,$$

որի անդամները a_1, a_2, ..., a_n, ... թվեր են (**թվային Շ.**) կամ ֆունկցիաներ (**ֆունկցիային Շ.**): Եթե թվային Շ–ի առաջին n անդամների գումարը (մասնակի գումար)՝ $S_n = a_1 + a_2 + ... + a_n$, n–ի անսահման աճի դեպքում ձգտում է որոշակի S սահմանի, ապա այդ S թիվն անվանում են շարքի գումար, իսկ Շ.՝ զուգամիտվող, հակառակ դեպքում՝ տարամիտվող: Օր.՝ $1 + q + q^2 + \cdots + q^n$ անսահմանափակ երկրչփ. պրոգրեսիան $|q| < 1$–ի դեպքում զուգամիտվող Շ. է, որի գումարը՝ $S = 1/(1-q)$: Ներդաշնակ շարքը տարամիտվող է:

ՇԱՐՔԱՄՆԿԵՐ (Tricholoma), բազիդիավոր սնկերի շարքանսկայինների ընտանիքի ցեղ: Հայտնի է 90 տեսակ, ՀՀ–ում՝ 21 (մոխրագույն, հողամոխրագույն, տխուր ևն Շ.): Տարածված են հիմնականում ասեղնատերև անտառներում աշնանը: Հիմնականում միկոռիզագոյացնող են, համակեցության մեջ են մտնում սոճու հետ: Ուտելի են, ունեն հաճելի համ և մրգային հոտ:

ՇԱՐՔԱՅԱՆ, գղտ. և բնափայտավոր մշակաբույսերի սերմերը ցանելու և հրնթացս պարարտացնելու մեքենա: Ցանքի եղանակից կախված՝ լինում են շարային, բնային, կետագծային, ցրված ևն, քարշուժի տեսակից կախված՝ տրակտորի և ձիու, ըստ նշանակության՝ համապիտանի (տարբեր մշակաբույսերի ցանքերի), մասնագիտացված (եգիպտացորենի, բանջարաբույսերի պարարտացման), համակցված (ցանքի և միաժամանակյա պարարտացման) Շ–ներ:

ՇԱՐՔԵՐԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ, *շարքերի* ընդհանրացված գումարների կառուցման եղանակներ: Մաթ–ում և ֆիզիկայում կան սովոր. իմաստով գումար չունեցող՝ **տարամետ շարքեր**, որոնց բնական կլիներ վերագրել այս կամ այն գումարը: Հիմնականում դիտարկվում են շարքերի գումարման **ռեգուլյար մեթոդներ**, այսինքն՝ մեթոդներ, որոնցով յուրաքանչյուր զուգամետ շարքի վերագրվում է այն գումարը, որը շարքի գումարն է սովոր. իմաստով:

ՇԱՅ Բորիս (Բարուխ, 1866–1932), հրեա քանդ.: 1895–1905–ին՝ Սոֆիայում: Երուսաղեմի արվ–ի և արհեստի «Բեցալել» դպրոցի (1906) և նույնանուն թանգարանի հիմնադիրը: Հեղինակ է կրոն. թեմաներով գործերի («Սովսեսը Նևո լեռան վրա», արձան, 1890), դիմաքանդակների (Մ. Մ. Անտոկոլսկու, 1894, Թ. Հերցլի, 1920–ական թթ.), ժանր. կերպարների («Ծեր բուլղարուհին», 1897, ևն):

ՇԱՅԿԱՅԱ Վալենտինա Նիկոլաևնա (1882–1978), ռուս. մանկավարժ: ԽՍՀՄ–ում երաժշտ–գեղագիտ. դաստիարակության հիմնադիրը: ՌԽՖՍՀ ՄԳԱ ակադ. (1950): Ս. Թ. *Շացկու* կինը: 1948–62–ին՝ ՌԽՖՍՀ ՄԳԱ գեղ. դաստիարակության ԳՀԻ–ի տնօրենն:

ՇԱՅԿԻ Ստանիսլավ Թեոֆիլովիչ (1878–1934), ռուս. մանկավարժ: Վ. Ն. *Շացկայայի* ամուսինը: 1932–34–ին՝ Մոսկվայի կոնսերվատորիայի տնօրենն: Բանվորների երեխաների համար հիմնադրել է առաջին ակումբները Մոսկվայի արվարձաններից մեկում (1905), Կալուգայի նհնզ–ում («Առույգ կյանք», 1911), ժողկրթության 1–ին մասնագիտացված կենտրոնը (1919):

ՇԱՈՒԴԻՆ (Schaudinn) Ֆրից (1871–1906), գերմանացի նախակենդանաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1905): 1905–ին հայտնաբերել է (Է. *Հոֆմանի* հետ) սիֆիլիսի հարուցիչը:

ՇԱՈՒԿԻ Ահմեդ (1868–1932), եգիպտացի արաբ գրող: Արաբ. արդի բանաստեղծության հիմնադիրներից, «բանաստեղծությունների արքա»: Հայտնի է Շ–ի «Շաուկիյաթ» (գիրք 1, 2, 1898, 1927, գիրք 3, 4, հրտ.՝ 1936, 1943) դիվանը: Հեղինակ է նաև պատմ. թեմաներով չափածո դրամաների («Կլեոպատրայի մահը», 1927), պատմվածքների ու վիպակների:

«ՇԱԽԻԴ», ազգ., գր., քաղ. շաբաթաթերթ (1894–97, Թեհրան): Իրանահայ առաջին պարբ–ը: Խմբ–ներ՝ Հովհաննես խան Մասեհյան, Վրթանես Փափազյան:

«ՇԱԽԻԴ», ազգ., գր., գիտ. կիսամսյա հանդես (1900–01, Վառնա): Խմբ.՝ Երուխան:

ՇԱՔԱՐ (լատ.՝ saccarum, հուն.՝ sakchar), քաղցրահամ սննդամթերք: Ստացվում է հիմնականում շաքարի ճակնդեղից և շաքարեղեգնից: Թողարկվում է բյուրեղանման շաքարավազի և շաքար–ռաֆինադի (կտորներով, ռաֆինացված շաքարավազի, շաքարի փոշու) ձևով: 100 *գ* Շ–ի կալորիականությունը՝ 1,68 *ՄՋ* (մոտ 400 *կկալ*): Տես նաև *Եղեգնաշաքար*:

ՇԱՔԱՐԱՉԱՓ, լուծույթներում շաքարի (կամ օպտիկապես ակտիվ այլ նյութերի) պարունակության որոշման սարք: Աշխ–ը հիմնված է լուծույթում լույսի բևեռացման հարթության պտույտի անկյունը չափելու վրա, որի մեծությունը համեմատական է լուծույթի կոնցենտրացիային: Չափման եղանակը կոչվում է շաքարաչափություն: Օգտագործվում է սննդի և քիմիաղեղագործ. արդ–յան մեջ:

ՇԱՔԱՐԵՂԵԳՆ (Saccharum), դաշտավայրային կազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Շաքարատու մշակարույս է: Հայտնի է 5–10 տեսակ՝ հիմնականում Ասիայի (Հնդկաստան), Ամերիկայի (Բրազիլիա, Կուբա) երկրներում, ինչպես նաև փոքր տնկարաններում (Միջին Ասիա): Շ–ի ցողունները պարունակում են մինչև 20 % *շաքար*: Որոշ տեսակներ օգտագործում են աղցաններ, թուղթ պատրաստելու համար, նաև որպես կեր:

ՇԱՔԱՐԻ ՃԱԿՆԴԵՂ (Beta vulgaris), *ճակնդեղի* տարատեսակ՝ սովոր. արմատապտուղներով: Տեխ. բույս է, որի արմատից ստանում են *շաքար* (պարունակությունը՝ մինչև 19,5 %): Մշակում են ԱՄՆ–ում, եվրոպ. երկրներում, ՌԴ–ում, Ուկրաինայում և այլուր (մինչև 1999–ը՝ նաև ՀՀ–ում): Բերքատվությունը՝ 250–500 *գ/հա*:

ՇԱՔԱՐՅԱՆ Ալեքսանդր Նիկոլայի (1912–1984), նկարիչ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1956): 1951–64–ին՝ ԵՌԹ գլխ. նկարիչ: Զևավորել է Ա. Պ. Չեխովի «Երեք քույր» (1952), Շիրվանզադեի «Չար ոգի» (1959) թատեր., Տ. Չուխաճյանի «Արշակ Բ» (1956) օպեր., Ժ. Մինկուսի «Դոն Կիխոտ» (1953), Ա. Խաչատրյանի «Սպարտակ» (1966) բալետ. ներկայացումները, «Քառս» (1972), «Աքսորական № 011» (1978, երկուսն էլ՝ Հայֆիլմ) կինոնկարները:

ՇԱՔԱՐՅԱՆ Արմեն Աբրահամի (ծ. 1955), ակնաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1996), պրոֆ. (1999): ՀՀ–ում մանկ. ակնաբանության հիմնադիրներից: «Մարի Նուբար ակնաբուժական կլինիկայի» ղեկ. (1988–ից): Աշխ–ները վերաբերում են երկաչյա տեսողության վրա բնականն և ախտաբանաֆիզիոլոգ. գործոնների ազդեցությանը, կարճատեսության զարգացմանն ու կանխարգելմանը: ՀՀ ԱՆ գլխ. մանկ. ակնաբան (1985–ից):

ՇԱՔԱՐՅԱՆ Գուրգեն Անդրեասի (1908–1990), անասնաբույժ–մանրէաբան: Անասնաբուժ. գիտ. դ–ր (1946), պրոֆ. (1946): Աշխ–ները վերաբերում են գղտ. կենդանիների մի շարք վարակիչ հիվանդությունների նկարագրման, իմունիտետի և այլ հարցերի:

ՇԱՔԱՐՅԱՆ Հրաչիկ Գրիգորի (1930–2005), փիլ.: Փիլ. գիտ. դ–ր (1971), պրոֆ. (1973): Աշխ–ները վերաբերում են հայ փիլ–յան պատմության և տես. փիլ–յան հարցերին:

ՇԱՔԱՐՅԱՆ Ղևոնդ Լևոնի (1900–1961), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1949), պրոֆ. (1949): Աշխ–ները վերաբերում են ՀԽՍՀ պետ. բյուջեի, ֆին. և վարկ. համակարգերի զարգացման հարցերին:

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան:

ՇԱՔԱՐՅԱՆ Մարիա Սմբատի (1924–2003), իրավաբան: Իրավաբ. գիտ. դ–ր (1972), պրոֆ. (1974): Մասնակցել է ԽՍՀՄ և միութ. հանրապետությունների քաղաքացաց. դատավարության, նոտարիատի, պետ. իրավարարության մասին օրենքների մշակմանը:

ՇԱՔԱՐՅԱՆ Յուրի Ղևոնդի (ծ. 1933), էլեկտրաէներգետիկայի և էլեկտրամեխանիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1975), պրոֆ. (1978): Մոսկվայի էլեկտրաէներգետիկայի ԳՀԻ փոխտնօրեն, գիտ. ղեկ.: ՌԴ գիտ. վաստ. գործիչ (2006): Աշխ–ները վերաբերում են փոփոխ. հոսանքի էլ. մեքենաների ավտոմատ կարգավորման, էլեկտրահաղորդակի, էլեկտրաէներգետիկ համակարգերի տեսության հարցերին: Մշակել է նոր տիպի ոչ համաժամանակյա էլ. մեքենաներ:

ՇԱՔԱՐՅԱՆ Ստեփան Գրիգորի (ծ. 1935), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2009): ՀՀ ժող. արտիստ (2017): ԵՊԿ պրոֆ. (1998): Գրել է «Նախանձ» (1966), «Աղավնավանք» (1996) բալետները, կոնցերտ՝ սիմֆ. նվագախմբի համար (1964), «Խորեոգրաֆիկ սիմֆոնիա» (1968), սյուիտ՝ կամեր. նվագախմբի համար (1985), «Կոմիտասի հիշատակին» (1965) պոեմը, «Հայաստան» (1993) սիմֆ. պոեմը, սիմֆ. նախերգանք (1995), խմբերգեր, նաև ջազ. կոմպոզիցիաներ, վոկալ, էստրադ. և այլ երկեր, մուլտֆիլմերի երաժշտություն («Հայելի», «Պինգվին Վինը», «Անհաղթը» ևն), մշակել ժող. երգեր:

Երևանյան ջազ. փառատոնի (1965), ՀՀ Մ՚Ն (2009) ոսկե մեդալներ:

ՇԱՔԱՐՅԱՆ Վռամշապուհ Ավետիսի (1906–1982), նկարիչ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1967): Պրոֆ. (1963): Ստեղծագործել է գրաֆիկայի և գեղանկարչության բնագավառներում («Զանգվի ափին», 1946, «Ինքնանկար», 1962, «Դանտե», 1965, ՀԱՊ, «Հուդիթ», 1966, «Ներկարար Հակոբը», 1967, ևն): Հեղինակ է նաև հոդվածների, հեռանկարի, գծանկարի և գույնի մասին տես. աշխ–ների:

ՇԱՔԱՐՅԱՆ Ֆելիքս Պողոսի (1939–2015), արձակագիր, լրագրող: 1990–2000-ին՝ «Գրական Լոռի» թերթի հիմնադիր-խմբ.: Հեղինակ է «Իմ կանաչ պատուհանը» (1968), «Վարդազարն իջավ լեռներից» (1975), «Պարզկա գիշեր» (1982) վիպակների և պատմվածքների, «Մի անձրևոտ օր» (2006) պատմվածքների ժող-ների, «Լեռները թիկունքում» (1987), «Հանգույց» (2002), «49 թվականը» (2005), «53 թվականից հետո» (2010), «Օտարը» (2014) վեպերի:

ՀԳՄ Գ. Զոհրապի անվ. (1990) մրց., «Գրական վաստակի համար» (2009), ՀՀ ՄՆ ոսկե (2009), «Գրիգոր Նարեկացի» (2014) մեդալներ:

ՇԱՔԱՐՆԵՐ, ցածրմոլ. *ածխաջրեր*՝ միաշաքարներ և բազմաշաքարներ: Շ. ջրում լուծելի, քաղցրահամ, բյուրեղ. նյութեր են: Շ. են նաև բոլոր ածխաջրերը:

ՇԱՔԻ, գետ ՀՀ Սյունիքի մարզում, Որոտանի ձախ վտակը: Սկիզբ է առնում Սյունիքի բարձրավանդակի Ծղուկ լ–զագաթի հվ.–արմ. լանջից՝ 2560 *մ* բարձր–ից: Երկ.՝ 17 *կմ*, ավազանը՝ 16,4 *կմ*², ջրի միջին ծախսը՝ 2 *մ*³/*վ*: Գետի վրա կան ջրվեժներ, ամենաարձրը *Շաքիի ջրվեժն* է:

ՇԱՔԻԻ ՋՐԼԵԿ, կառուցվել է 1936-ին Որոտան գետի ձախ ափին Շաքի վտակի վրա: Հաշվարկ. ճնշումը՝ 54,5 *մ*, ջրի ծախսը՝ 2,0 *մ*³/*վ*, հզորությունը՝ 840 *կՎտ*: Միացված է ՀՀ միացյալ էլեկտրահամակարգին:

ՇԱՔԻԻ ՋՐՎԵԺ, ՀՀ Սյունիքի մարզում՝ Որոտանի կիրճում՝ Սիսիան ք–ից 3 *կմ* հս–արմ.՝ Շաքի գետի վրա: Բարձր.՝ 18 *մ*: Ջրի հիմն. մասն օգտագործվում է *Շաքիի ջրէկում* և ոռոգման նպատակով:

ՇԱՔԻԼՆԵՐ (Cotyledones), սերմնավոր բույսերի 1-ին տերևները, որոնք զարգանում են դեռևս սաղմի մեջ: Միաշաքիլավորներն ունեն 1 շաքիլ, երկշաքիլավորները՝ 2, ասեղնատերևավորները՝ 2–15:

ՇԱՔԼՅԱՆ Արիս Մկրտչի (1900–1959), գրող, խմբ.: 1929–45-ին՝ *«Եփրատ»* (Հալեպ) թերթի խմբ.: 1945-ին հայրենադարձել է: Հեղինակ է «Դեղին երգեր» (1927) բանաստեղծությունների, «Միջինք» (1943), «Կար ու չկար…» (1946), «Մեր Հայաստանն է» (1949) պատմվածքների ժող-ների, «Ֆելլահներ» (1958) վեպի, նաև գրույցների, հեքիաթների:

ՇԱՖԱՔ Էլիֆ (ծ. 1971), թուրք արձակագիր: Գրում է թուրք. և անգլ.: «Ստամբուլի բիճը» (2006, հայ.՝ 2012) վեպում հաստատել է Հայոց ցեղասպանության իրողությունը: Հեղինակ է նաև «Փինհան» (1997), «Մահրամ» (2000), «Լվական ամրոցը» (2002), «Քավարան» (2004) , «Սև կաթ» (2007), «Սեր» (2009) և այլ վեպերի:

ՇԱՖԵՐ (Szafer) Վլադիմիր (1885–1970), լեհ բուսաբան, հնաբուսաբ–յան գիտ. դպրոցի հիմնադիր: Ֆաշիստ. օկուպացիայի տարիներին եղել է ընդհատակյա համալսարանի ռեկտոր:

ՇԱՖԻՐՈՎ Պյոտր Պավլովիչ (1669–1739), հրեա բարոն (1710–ից), ռուս. պետ. գործիչ և դիվանագետ, փոխկանցլեր (1709–ից): Սենատոր (1717–23, 1733): Պետրոս I–ի զինակիցը: Հեղինակ է Հյուսիսային պատերազմի պատճառների մասին (1717) աշխ–յան:

ՇԱՖՐԱՆ Դանիիլ Բորիսովիչ (1923–1997), ռուս. թավջութակահար: ԽՍՀՄ ժող. արտիստ (1977): Թավջութակի ռուս. դպրոցի նշանավոր ներկայացուցիչներից: 1943–ից՝ Մոսկվայի ֆիլհարմոնիայի մենակատար: ԽՍՀՄ Պետ. մրց. (1952):

ՇԱՖՐԱՆՈՎ Վիտալի Դմիտրևիչ (1929–2014), ռուս. ֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (1997): Բացահայտել է մագնիս. դաշտում պլազմայի միկրոսկոպիկ. կայունության պայմանները և զարգացրել *փոկամակներում* պլազմայի վարքի տեսությունը:

ԽՍՀՄ Պետ. (1971), Լենինյան (1984) մրց-ներ:

ՇԵՓԱԼԻՆ Վիսարիոն Յակովլևիչ (1902–1963), ռուս. կոմպոզիտոր: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1947): Հեղինակ է «Անսանձ կնոջ սանձահարումը» (1957) օպերայի, «Մոսկվա» (1946) կանտատի, 5 սիմֆոնիայի (1925–62): Ավարտել և խմբագրել է Մ. Պ. Մուսորգսկու «Սորոչինյան տոնավաճառ» օպերան, Մ. Ի. Գլինկայի «Կամարինյան» սկերցոն: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943, 1947):

ՇԵՓԻԹՈՒՆ, **Շեփիտու**, ուրարտ. դիցարանի 8–րդ աստվածությունը: Գ. Ղափանցյանը Շ. կապում է Միջագետքի Սարիտու–Սիդուրի դիցուհու անվան հետ: Ըստ Ն. Ադոնցի՝ Շ–ի պաշտամունքն առնչվել է Շեբեթերիա ք–ի հետ (ենթադրվում է՝ Արածանիի աջ ափին):

ՇԵՆԼ (Scheel) Վայտեր (1919–2016), ԳԴՀ նախագահ՝ 1974–79-ին: Ազատ դեմոկրատ. կուս-յան նախագահ՝ 1968–74-ին: 1969–74-ին՝ փոխկանցլեր և ԱԳ նախարար:

ՇԵՆԼԵ (Scheele) Կառլ Վիլհելմ (1742–1786), շվեդ քիմիկոս, դեղագործ: Առաջինն է ստացել բազմաթիվ անօրգ. և օրգ. միացություններ, այդ թվում՝ քլոր (1774), գլիցերին, կապտաթթու (1782), մի շարք օրգ. թթուներ, ապացուցել է օդի բարդ բաղադրությունը:

ՇԵՆԼԻՏ, միներալ վոլֆրամատների դասից: Կոչվել է Կ. *Շեելեի* անունով: Քիմ. կազմը՝ $CaWO_4$: MoO_3 խառնուրդ պարունակող (մինչև 24 %) Շ. կոչվում է միլիքդաշեելիտ: Կարծր.՝ 3,5–4,5, խտ.՝ 6 *գ/սմ*³: Վոլֆրամի կարևոր հանքանյութ է:

ՇԵԹԼԱՆԴԱԿԱՆ ԿՂԶԻՆԵՐ (Shetland Islands), կղզեխումբ (100–ից ավելի կղզիներ) Ատլանտ. օվկ–ի հս–արլ–ում, Մեծ Բրիտանիայի կազմում: Տարածքը՝ 1,4 հզ. *կմ*², բարձր.՝ 450 *մ*: Մակերևույթը բլրավոր հարթավայրեր ու սարավանդներ են: Զբաղվում են ձկնորսությամբ, անասնապահությամբ: Վարչ. կենտրոնը՝ Լերուիկ:

ՇԵՒՆ Ալեքսանդր Սեմյոնովիչ (1662–1700), բոյար, ռուս. բանակի զորահրամ., գեներալիսիմուս (1696): Մ. Բ. *Շեինի* ծոռը: 1696–ի Ազովի արշավանքի ժամանակ՝ ցամաք. զորքերի հրամ.: Պետրոս I–ի արտ. ճանապարհորդության ժամանակ՝ բանակի հրամ. և կառ–յան ղեկ–ներից:

ՇԵՒՆ Միխայիլ Բորիսովիչ (1570–ական թթ.–1634), ռուս. պետ. գործիչ, վոյեվոդ: Ա. Ս. *Շեինի* նախապապը: 1609–11-ին գլխավորել է Սմոլենսկի պաշտպ–յունը, մինչև 1619–ը՝ լեհ. գերության մեջ: 1632–34-ի ռուս–լեհ. պատերազմի ժամանակ պաշարված Սմոլենսկի բանակի հրամ.: Ռուս. բանակի անձնատուր լինելուց հետո մահապատժի է ենթարկվել:

ՇԵԼԱՊԻ, լուսն. աստվածություն ուրարտ. դից–յան մեջ: Համապատասխանում է միջագետքյան Սին աստծուն:

ՇԵԼԴԱ, Էսկո (հոլ.՝ Schelde, ֆրանս.՝ Escaut), գետ Ֆրանսիայում, Բելգիայում և Նիդեռլանդներում: Երկ.՝ 430 *կմ*, ավազանը՝ 35,5 հզ. *կմ*², ջրի միջին ծախսը՝ 100 *մ*³/*վ*: Թափվում է Հս. ծով: Նավարկելի է: Ձրանցքներով կապված է Մաաս, Սոմ, Սեն գետերին: Ափին են Գենտ, Անտվերպեն ք–ները:

ՇԵԼԴԵՐՈՒՊ, **Սկիելդերուպ** (Schjelderup), Գերհարդ (1859–1933), նորվեգացի կոմպոզիտոր: Նորվեգ. օպերայի (9 օպերա, այդ թվում՝ «Նորվեգական հարսանիք», 1900, 2–րդ խմբագրությունը՝ 1921) հիմնադիրներից: Հեղինակ է նաև «Հրաշալի եղջյուրը» (1905) բալետի, 2 սիմֆոնիայի (1887, 1924), Է. Գրիգի մասին առաջին հիմնարար աշխ–յան:

ՇԵԼԵՆԿՈՎ Ալեքսանդր Վլադիմիրովիչ (1903–1996), ռուս. կինոօպերատոր: Լատվ. ԽՍՀ (1949), ՌԽՖՍՀ (1959) արվ. վաստ. գործիչ: Նկարահանել է (Ե. Ե. Չենի հետ) «Զոյա» (1944), «Ռայնիս» (1949), «Ծովակալ Ուշակով» (1953), «Կոմունիստ» (1958), «Սոֆյա Պերովսկայա» (1968), «Յարոսլավ Դոմբրովսկի» (1976) ֆիլմերը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1947, 1950, 1951):

ՇԵԼԵՊԻՆ Ալեքսանդր Նիկոլաևիչ (1918–1994), խորհրդ. կուս. և պետ. գործիչ: 1958–61-ին՝ ԽՍՀՄ ՊԱԿ–ի նախագահ, 1961–67-ին՝ ԽՄԿԿ ԿԿ քարտուղար, 1962–65-ին, միաժամանակ՝ կուս. պետ. վերահսկողության նախագահ, ԽՍՀՄ ՆԽ նախագահի տեղակալ:

ՇԵԼԵՍՏ Ալլա Յակովլևնա (1919–1998), ռուս. բալետի արտիստուհի, բալետմայստեր, պարուսույց: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1957): 1937–63-ին՝ Լենինգրադի ՕԲԹ–ի մենապարուհի (ժիզել՝ Ա. Ադանի «Ժիզել», Նիկիա՝ Լ. Մինկուսի «Բայադերկա», Էգինա՝ Ա. Խաչատրյանի «Սպարտակ», ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1947, 1951):

ՇԵԼԵՍՏ Պյոտր Եֆիմովիչ (1908–1996), խորհրդ. կուս. և պետ. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1968): 1963–72-ին՝ Ուկր. կոմկուսի ԿԿ 1-ին քարտուղար: 1972–73-ին՝ ԽՍՀՄ ՆԽ նախագահի տեղակալ:

ՇԵԼԵՐ (Scheler) Մաքս (1874–1928), գերմանացի փիլ., փիլ. մարդաբանության, արժեքաբանության և իմացության սոցիոլոգիայի հիմնադիրներից: Ի. *Կանտի* ձևական բարոյագիտ–յանը հակադրել է, այսպես կոչված, արժեքների նյութ. բարոյագիտ–յունը, որի հիմքում ընկած է զգացմունքի՝ որպես արժեքի ձեռքբերման ինտենցիոնալ ուղղորդված գործողության մասին ուսմունքը: Հեղինակ է «Ֆորմալիզմը բարոյագիտության մեջ և արժեքների նյութական բարոյագիտությունը» (հ. 1, 2, 1913, 1916), «Տիեզերքում մարդու տեղի մասին» (1928) և այլ աշխ–ների:

ՇԵԼԻԽՈՎԻ ԾՈՑ, Օխոտի ծովի հսարլ–ում՝ Սիբիրի ափերի և Կամչատկա թ–կղզու (ՌԴ) միջև: Երկ.՝ 650 *կմ*, լայն.՝ 130 – 300 *մ*: Խոր.՝ 50–150 *մ*, առլզն՝ 350 *մ*: Կոչվել է ռուս ծովագնաց Գ. Ի. Շելիխովի (1712–1795) անունով:

ՇԵԼԻՖ, Ալժիրի ամենաերկար գետը: Երկ.՝ մոտ 725 *կմ*, ավազանը՝ մոտ 35 հզ. *կմ*²: Թափվում է Միջերկր. ծովը:

ՇԵԼԼ (Schell) Մարիա (1926–2005), գերմ. և ավստր. թատրոնի ու կինոյի դերասանուհի: Մ. *Շելլի* քույրը: Հանդես է եկել Ցյուրիխի, Բեռլինի և Վիեննայի թատրոններում: Նկարահանվել է կինոյում («Առնետներ», «Ռոզա Բեռնդ», «Սպիտակ գիշերներ», «Կարամազով եղբայրներ», «Ժերվեզա» ևն):

ՇԵԼԼ Մաքսիմիլիան (1930–2014), գերմ. և ավստր. թատրոնի ու կինոյի դերասան, ռեժ.: Մ. *Շելլի* եղբայրը: Նկարահանվել է կինոյում («Նյուրնբերգյան դատավարություն», «Ալտոնայի մենակյացները», «Զուլիա», «Պետրոս Մեծ», «Երիտա-

սարդ Եկատերինան» ևն)։ Նկարահանել է գեղ. «Առաջին սեր» (1970, ըստ Ի. Ս. Տուրգենևի), «Վիեննական անտառի հեքիաթները» (1979, ըստ Է. Ֆոն Հորվատի), վավերագր. «Մառլեն» (1984) և այլ ֆիլմեր։

ՇԵԼԼԻ (Shelley) Փերսի Բիշի (1792–1822), անգլիացի բանաստեղծ։ Առաջին նշանակալի երկը «Մաբ թագուհին» (1813) փիլ. պոեմն է։ Հեղինակ է նաև «Ռոզալինդա և Ելենա» (1819) չափածո վիպակի, «Իսլամի ապստամբությունը» (1818), «Ազատագրված Պրոմեթևսը» (1820, հայ.՝ 1968) պոեմների, «Չենչի» (1820, հայ.՝ 1977) ողբերգության, «Էդիպ արքան կամ Հաստատուն բռնապետը» (1820) երգիծ., «Հելլադա» (1822) քնարերգ. դրամաների, «Երգ առ բրիտանական այրերը» (1819), «Ներքրող արևմտյան հողմին» (1820) և այլ փիլ. բանաստեղծությունների, «Պոեզիայի պաշտպանություն» (1822, հրտ.՝ 1840) տես. աշխ–յան։ Հայ. հրատարակվել են նաև «Ընտիր տողեր» (1963), «Բարի գիշեր։ Ընտիր բանաստեղծություններ» (2007) ժող–ները։

ՇԵԼԼԻՆԳ (Schelling) Թոմաս (1921–2016), ամերիկացի տնտեսագետ։ Աշխ–ները վերաբերում են կոնֆլիկտի ռազմավարությանը, ընտրությանն ու հետևանքներին, միկրոպատճառների ու միկրոընտրության խնդիրներին։

Նոբելյան մրց. (2005, Ռ. Աումանի հետ)։

ՇԵԼԼԻՆԳ Ֆրիդրիխ Վիլհելմ Յոզեֆ ֆոն (1775–1854), գերմանացի փիլ.։ Հրաժարվելով Յ. Գ. *Ֆիխտեի* ուսմունքից՝ զարգացրել է բնության՝ որպես կենդանի օրգանիզմի օբյեկտիվ–իդեալիստ. դիալեկտիկայի, ինչպես նաև անգիտակցական–հոգևոր ստեղծագործ. սկզբի, հակադրությունների շարժուն միասնությամբ բնորոշվող աստիճանների հասնող համակարգի («պոտենցիաներ») սկզբունքները։ Ըստ Շ–ի՝ արվ–ն աշխարհի ճանաչման բարձրագույն ձևն է, բացարձակը՝ բնության և ոգու, սուբյեկտի և օբյեկտի չտարբերակված նույնությունը։ Չարիքի աղբյուրը մարդու ազատ անկումն է բացարձակից, որի նախադրյալը (Յ. *Բյոմեից* հետո) համարել է Աստծու մեջ «խավարի հիմքերի» առկայությունը։

ՇԵԼԿՈՎՆԻԿՈՎ (Շելկովնիկյան, Մետաքսյան) Ալեքսանդր Բորիսի (1870–1933), բնախույզ, կովկասագետ, բնագետ։ Հայաստանի կենդ. և բուս. աշխարհների ուսումնասիրության հիմնադիրը։ Բեհբութ (Բորիս) *Շելկովնիկովի* որդին։ Կազմել է Հայաստանի բնաշխարհի բազմաթիվ հավաքածուներ։ Նրա նախաձեռնությամբ Երևանում հիմնադրվել են բնապատմ. (1922), ՀԽՍՀ հայժողկոմատին կից գղտ. (1925) թանգարանները, Բուսաբ. այգին (1927, Հրազդանի կիրճում)։ Շ–ի անունով են կոչվել Կովկասում հայտնաբերված բույսերի ու կենդանիների մոտ 40 տեսակ ու ենթատեսակ։

ՇԵԼԿՈՎՆԻԿՈՎ (Շելկովնիկյան) Բեհբութ Ալեքսանդրի (1897–1975), արվեստաբան։ Բեհբութ (Բորիս) *Շելկովնիկովի* թոռը։ 1934–ից զբաղվել է Անիից և Դվինից պեղված խեցեղենի ու ապակու, IX–XV դդ–ի Այսրկովկասի խեցեգործության, նաև ռուս. կիրառ. արվ–ի ուսումնասիրությամբ։

ՇԵԼԿՈՎՆԻԿՈՎ (Շելկովնիկյան) Բեհբութ (Բորիս) Մարտիրոսի (1837–1878), ռուս. բանակի գեն–մայոր (1877)։ Ալեքսանդր *Շելկովնիկովի* հայրը։ Բեհբութ Ա. *Շելկովնիկովի* պապը։ Մասնակցել է Ղրիմի պատերազմին (1853–56), Կովկասի լեռնականների դեմ մարտերին (1858–59)։ 1863–64–ին ծառայել է ԳՇ–ում, 1865–ից՝ Զաքաթալայի, 1876–ին՝ Սևծով. ռազմ. օկրուգի պետ։ 1877–ի մայիսին խափանել է Սոչին գրավելու թուրք. բանակի փորձերը, ապա ազատագրել Աբխազիան։ Գեորգիևյան 1–ին և 3–րդ աստիճանների խաչեր և այլ պարգևներ։

ՇԵԼԿՈՎՆԻԿՈՎ Սերգիուշ (Մետաքսյան Սարգիս, 1871–1929), երգիչ։ 1904–ից՝ Վարշավայի օպեր. մեծ թատրոնի երգիչ (1907–10–ին՝ տնօրեն), 1927–ից՝ լեհ. «Բագատել» թատրոնի ղեկ.։ Դերերգերից են՝ Ժերմոն, Ամոնասրո (Ջ. Վերդիի «Տրավիատա», «Աիդա»), Անջելոտտի (Ջ. Պուչչինիի «Տոսկա») ևն։ Համերգ. ծրագրում եղել են նաև հայկ. երգեր։

ՇԵԼՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ, հին աշելյան մշակույթ, վաղ հին քարի դարի հնագիտ. մշակույթ Եվրասիայում և Աֆրիկայում, Հվ–արմ. և Հվ. Ասիայում, նաև Հայաստանում։ Ունի 800–300 հզ. տարվա վաղեմություն։ Շ. մ. հայտնաբերել է ֆրանսիացի հնագետ Բյուշե դը Պերտը (1846) Փարիզի մոտակայքում՝ Շել (Chelles) ք–ի մոտ (այստեղից՝ անվանումը)։ Շ. մ–ին բնորոշ են ձեռքի պարզունակ գործիքները։

ՇԵԽԼՅԱՆ Ժորժ Սարգսի (ծ. 1942), ճարտ.։ Համահեղինակ է Սևան ք–ի գլխ. հատակագծի (1970), «Զվարթնոց» օդանավակայանի (1981, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1985, վերակառուցումը՝ 1993), Ռենտգենաբանության ինստ–ի (1984), ՀՀ Գերագույն դատարանի (1985–86), Պիոներների պալատի (1988–89), Կենտր. բանկի (1995) շենքերի, Գյումրիի կենտր. հրապարակի (1980–88) վերակառուցման նախագծերի։ 1994–ից՝ Գրենոբլում (Ֆրանսիա)։

ՇԵԽՈՅԱՆ Կարո Սերգեյի (1923–2014), ճարտ.։ ՌԽՖՍՀ վաստ. ճարտ. (1980)։ ՄՃԱ պրոֆ. (1998), թղթ. անդամ (1999)։ Մոսկվայի պատվ. շինարար (1999)։ Հեղինակ. խմբերի հետ նախագծել է Մոսկվայում՝ «Կրիստալ» գործարանը, Օստանկինոյի հեռուստակենտրոնը, Կինոհամերգ. դահլիճ, հյուրանոցներ ևն, պիոներների պալատ՝ Հանոյում, 1988–ի երկրաշարժից տուժած Շիրակամուտի վերականգնումն ու բնակելի տներ ևն։

ՌԽՖՍՀ (1973), ՌԴ (2001) Պետ., ԽՍՀՄ ՆԽ (1980) մրց–ներ։

ՇԵԿԼԻԿ (Cactarius deliciosus), **կաթնասունկ նրբահամ**, բազիդիավոր սնկերի կարգի կաթնասնկեր ցեղի սունկ։ Հայտնի է 15 տեսակ։ Աճում է սովորաբար խմբերով՝ ասեղնատերև անտառներում (նաև ՀՀ), միկոռիզագոյացնող է, համակեցության մեջ է մտնում սոճու հետ։ Որոշ տեսակներ ուտելի են։

ՇԵԿ–ՀՈՎՍԵՓՅԱՆ Եղիշե Թադևոսի (1893–1939), դատարժիշկ։ Բժշկ. գիտ. թեկնածու (1936), պրոֆ. (1936)։ Աշխ–ները վերաբերում են դատ. բժշկության և քրեագիտ–յան հարցերին։ Շ–Հ–ի նախաձեռնությամբ դատ. բժշկության ամբիոնին կից կազմակերպվել է թանգարան, այնուհետև՝ իրեղեն ապացույցների լաբորատորիա։ Երևանի և ՀԽՍՀ առժողկոմատի դատարժշկ. գլխ. փորձագետ (1929–ից)։

ՇԵԿՄԱՆ (Schekman) Ռենդի (ծ. 1948), ամերիկացի հրեա բջջաբան, կենսաքիմիկոս։ Փիլ. գիտ. դ–ր (1975)։ Աշխ–ները վերաբերում են բջիջներում կարևոր փոխադր. համակարգի բշտային ուղին կարգավորող մեխանիզմների բացահայտմանը։

Նոբելյան մրց. (2013, Ջ. *Ռոթմանի* և Թ. *Զյուդհոֆի* հետ)։

ՇԵԿՅԱՆ Համլետ Գուրգենի (ծ. 1935), ճարտարագետ–մեխանիկոս։ Տեխ. գիտ. դ–ր (2002), պրոֆ. (2003)։ Աշխ–ները վերաբերում են թրթռասողքի և լարումների ռելաքսացիայի, ԲՀ տատանումների ազդեցությամբ աշխատող բարակապատ կառուցվածքների մեխ. վարքի հարցերին։

ՇԵԿՈՅԱՆ Արմեն Հակոբի (ծ. 1953), արձակագիր, բանաստեղծ, խմբ.։ Հեղինակ է «Ճոճք» (1982), «Բախտ» (1987), «Թուղթ ու գիր» (1990), «Աղանդեր» (1996), «Երևան հյուրանոց» (2003) և այլ բանաստեղծությունների, «Մետաքսի ճանապարհը» (2004) պատմվածքների ժող–ների, «Հայկական ժամանակ» (հ. 1–5, 2005–11) վեպի, «Ավարայրի լույսը» (2005) պոեմի, նաև մանկ. գործերի։

ՀԳՄ Ա. Իսահակյանի անվ. (1990), ԹՄՄ (2004) մրց–ներ։

ՇԵԿՈՅԱՆ Սերիկ Հակոբի (1924–2015), դերասանուհի։ ՀԽՍՀ վաստ. (1962), ՎԽՍՀ ժող. (1983) արտիստ։ Արտեմ *Լուսինյանի* կինը։ 1945–ից՝ Թբիլիսիի հայկ. թատրոնի դերասանուհի (Սոնա՝ Շիրվանզադեի «Չար ոգի», Մարթա՝ Ա. Կասոնայի «Ծառերը կանգնած են մահանում», Սալոմե՝ Գ. Սունդուկյանի «Էլի մեկ զոհ», Ֆիլոմենա՝ Դե Ֆիլիպպոյի «Ֆիլոմենա Մարտուրանո», Նուարդ՝ Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ», ևն)։

ՀԹԳՄ «Արտավազդ» մրց. (1997), ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2011)։

ՇԵԿՈՅԱՆ Վլադիմիր Արմենակի (ծ. 1942), մանրէաբան, իմունաբան։ Բժշկ. գիտ. դ–ր (1978), պրոֆ. (1982)։ ՀՀ ԲԳԱ անդամ (2003)։ ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2010)։ Աշխ–ները վերաբերում են իմունաբան. կենսընթացներում նյարդահումորալ մեխանիզմներին. հիմնավորել է ենթատեսաթմբի կարգավորող ազդեցությունը միակորիզ ֆագոցիտային համակարգի բջիջների և նրանց լիզոսոմային ապարատի ֆունկցիոնալ ակտիվության վրա։

ՀՀ համաճարակաբանների, մանրէաբանների և մակաբուծաբանների ընկերակցության փոխնախագահ (1996–ից)։ ՀՀ «Մխիթար Հերացի» մեդալ (2000)։

ՇԵՀՐԻՄԱՆՅԱՆ (Շահրիմանյան, Շերիման) Զաքարիա Աստվածատուրի (1708–1784), իտալագիր գրող, փիլ., թարգմանիչ։ Հեղինակ է «Արիստիպպոս» (1744) քնար. գործի, «Կայոս Սարտիոս Կորիոլանոս» (1747) երգախառն պատմ. դրամայի, «Ալմանախ ի պէտս իմաստակների» փիլ. երկի, «Էնրիկո Վանտոնի ճանապարհորդությունը կապիկների և շնագլուխների աշխարհում» (հ. 1–4, 1764) արկած. վեպի, բժշկագիտ. («Բժիշկների և բժշկության մասին» ևն) և այլ գործերի։

ՇԵՀՐԻՄԱՆՅԱՆ (Շահրիմանյան) Ստեփանոս (1766–1830), բժիշկ, բուսաբան, բուսաբույժ, հաս. գործիչ։ 1791–96–ին Կ. Պոլսում մասնակցել է ժանտախտի համաճարակի դեմ պայքարին։ Նկարագրել է ժանտախտի տեսակները, ախտանշանները, ախտորոշման, բուժման և կանխարգելման միջոցները։ «Տնկաբանութիւն կամ Փղորայ Հայաստանի» (1818, Մտնդ., ձեռ. № 6267, 9856) աշխ–յան մեջ նկարագրել է Հայաստանի դեղաբույսերը, ներկայացրել հայ միջնադար. բուսաբուժության տվյալները։ Շ. Կովկասում

առաջինն է կիրառել բույսերի դասակարգումը՝ ըստ Կ. Լիննեյի:

ՇԵՂԱՆԻՍՏ, *շեղանկյունանիստ*, *զուգահեռանիստ* (սովորաբար՝ թեք), որի նիստերն իրար հավասար *շեղանկյուններ* են: Շ–ի առնվազն 2 զագաթների առընթեր բոլոր անկյուններն իրար հավասար են:

ՇԵՂԱՆԿՅՈՒՆ, քառանկյուն (հարթության մեջ), որի բոլոր կողմերն իրար հավասար են: Շ. կարելի է նաև սահմանել որպես *զուգահեռագիծ*, որի 2 հարևան կողմերը հավասար են, կամ որի անկյունագծերը փոխուղղահայաց են, կամ անկյունագիծը անկյան կիսորդ է: Այն Շ., որի անկյուններն ուղիղ են, կոչվում է **քառակուսի:**

ՇԵՂԱՏԱՓ, տառատեսակ, որի հիմն. գծերի թեքվածությունը դեպի աջ է: Օգտագործվում է շարվածքում տեքստի որևէ հատվածն ընդգծելու, հանրագիտ. գրկյան մեջ՝ հղումները նշանակելու համար:

ՇԵՂՈՒՄ, **դեվիացիա** (ուշ. լատ.՝ deviatio – շեղում), 1. շարժվող օբյեկտների (նավ, ինքնաթիռ, արկ ևն) շեղումը շարժման տրված ուղղությունից (հաշվարկ. հետագիծ)՝ որևէ պատահական արտաքին ազդակի ազդեցությամբ: 2. **Մագնիսական կողմնացույցի Շ.**, կողմնացույցի սլաքի շեղումը մագնիս. միջօրեականից. պայմանավորված է հիմնականում իրար մոտ տեղակայված մագնիսացված մարմինների (օր.՝ նավի պողպատե իրանի) և էլեկտրամագնիս. դաշտերի փոխազդեցությամբ: Վերացվում է լրացուցիչ մագնիսների միջոցով: 3. Հաճախային մոդուլացման դեպքում հաճախության ամենամեծ շեղումը միջին արժեքից: 4. **Շ. սոցիալական գիտություններում**, շեղումային վարքը տվյալ հասարակությունում ընդունված նորմերը և կանոնները խախտող վարքն է (հանցագործություն, ալկոհոլամոլություն, հաշիշամոլություն ևն): 5. (Տնտեսագիտ.) **Շ. բորսայական գների**, արժեթղթերի կուրսի փոփոխությունն է՝ ֆորսմաժոր. հանգամանքներում:

ՇԵՄԱՅԻՆ ԱԶԴԱՆՇԱՆ, ընդունիչ սարքի ելքի ազդանշան՝ նվազագույն արժեքով, որի դեպքում ապահովվում է ազդանշանի գրանցումը տրված հավաստիությամբ: Կիրառվում է կապի, հիդրո– և ռադիոտեղորոշման, օպտիկ. ուղղորոշման և այլ համակարգերի որակի վերլուծության ժամանակ:

ՇԵՄԱՅԻՆ ՏԱՐՐ, ավտոմատիկայում, հաշվող. տեխնիկայում և այլուր օգտագործվող սարք, որի ելքում ազդանշանը հայտնվում է միայն այն ժամանակ, երբ մուտքի ազդանշանի ազդեցությունը գերազանցում է գործարկման շեմ համարվող մակարդակը: Կիրառվում է մեծությունների (ազդանշանների) արժեքները տրված մեծության (ազդանշանի) հետ համեմատելու համար:

ՇԵՄԱՅԻՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, *տրամաբանության* բաժին. ուսումնասիրում է շեմային տրամաբ. ֆունկցիաները: Տրամաբ. $f(x_1, x_2,..., x_n)$ ֆունկցիան կոչվում է շեմային, եթե գոյություն ունեն այնպիսի $a_1, a_2,...,a_n$, c իրական թվեր (որտեղ c–ն կոչվում է «շեմ»), որ $f(x_1, x_2,..., x_n) = 1$. եթե $a_1x_1 + a_2x_2 +...+ a_nx_n \geq c$ և $f(x_1, x_2,..., x_n) = 0$, հակառակ դեպքում, սովորաբար, դիտարկվում են 0 կամ 1 արժեքներ ունեցող փոփոխականներից կախված շեմային ֆունկցիաները: Շ. տ. առաջացել է որպես կենդանիների և մարդու նյարդ. համակարգի աշխ–ի որոշ սկզբունքների ձևայնացում: Շ. տ–յան նշանավոր ներկայացուցիչներն են Ու. Մակ–Քալլոկը, Ու. Փիթսը, Ս. Մուոդգան, Վ. Ի. Վարշավսկին և ուր.:

ՇԵՄՅԱԿԻՆ Վահրամ Լևոնի (1951–2004), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1996), պրոֆ. (2004): 1996–2004–ին՝ Լոս Անջելեսի Շաոլոթ և Էլիզ Մերտինյան հայ ավետարան. վարժարանի տնօրեն: Աշխ–ները վերաբերում են Հայկ. հարցին ու Հայոց ցեղասպանությանը, XX դ–ի 1–ին կեսի հայ գաղթականության խնդիրներին:

ՇԵՄՅԱԿԻՆ Միխայիլ Միխայլովիչ (1908–1970), ռուս. քիմիկոս: Կենսաօրգ. քիմիայի հիմնադիրներից: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1958): Սոց. աշխ. հերոս (1969): 1959–ից՝ ԽՍՀՄ ԳԱ բնական միացությունների քիմիայի (1974–ից՝ Մ. Մ. Շ–ի անվ. կենսաօրգ.) ինստ–ի հիմնադիրն ու 1–ին տնօրենը: Աշխ–ները վերաբերում են բնական միացությունների (հակաբիոտիկներ, վիտամիններ ևն) քիմիային, էականորեն նպաստել են ժամանակակից կենսաօրգ. քիմիայի զարգացմանը: Գերմանիայի բնախույզների «Լեոպոլդինա» ակադ–ի անդամ (1968–ից):

ՇԵՄՅԱԿԻՆ Միխայիլ Միխայլովիչ (ծ. 1943), ռուս. գեղանկարիչ, գրաֆիկ, քանդ., բեմանկարիչ: 1971–81–ին՝ Փարիզում, ապա՝ Նյու Յորքում: Հեղինակ է խառը տեխնիկայով ստեղծած արտահայտիչ գործերի (Վ. Ֆ. Նիժինսկու դիմանկարը, 1984–88, շարք, «Մսեղիքով նատյուրմորտ», 1986, ևն), վիմագրությունների շարքի («Փարիզի որովայնը», 1977, «Սանկտ Պետերբուրգի կառնավալները», 1992, ևն), քանդակների (Պետրոս I–ի հուշարձանը Ս. Պետերբուրգում, 1990–ական թթ–ի սկիզբ, ևն): ՌԴ Պետ. մրց. (1993):

ՇԵՄՍ (Սափրիչյան) Հմայակ (1896–1952), գրող, մանկավարժ, ազգ. գործիչ: «Հայ վարժարան» ամսագրի (1926) հրտ.: Հեղինակ է «Ազգային դաստիարակութիւն» հոդվածաշարի, «Ռոշնական» (1943) պատմվածքների ժող–ի, «Պատմութիւն հայ գրականութեան» (հրտ.՝ 2000) աշխ–յան, նաև բանաստեղծությունների, որոնց հիման վրա ստեղծվել են բազմաթիվ երգեր:

ՇԵՄՍԵՏԻՆ ՍԱՄԻ, *Ֆրաշերի* (Semsettin Sami, Frashëri, 1850–1904), թուրք լուսավորիչ, գրող, գիտնական: Հեղինակ է ալբ. դպրոցների համար առաջին քերակ–յան դասագրքերի, բառարանների (թուրք–ֆրանս. և ֆրանս–թուրք., 2 հ., 1880), «Թալաթի և Ֆիթնաթի սերը» (1872) վեպի, «Բեսա կամ Հավատարմություն երդմանը» (1875) թուրք. առաջին պիեսի և այլ գործերի:

ՇԵՅԴՏ, **Շայդտ** (Scheidt), Սամուել (1587–1654), գերմանացի կոմպոզիտոր, երգեհոնահար: Հս–գերմ. երգեհոն. դպրոցի հիմնադիրներից: Խմբերգ. պոլիֆոնիայի վարպետներից: Գրել է «Սրբազան կոնցերտներ» (1622), «Հոգևոր կոնցերտներ» (4 ժող., 1631–40), «70 սիմֆոնիա՝ կոնցերտային ոճով» (տարբեր գործիքների համար, 1644–45), «Տաբուլատուրայի գիրք» (1650)՝ երգեհոնի համար, ևն:

ՇԵՅԹԱՆ (արաբ.՝ šaytan – մոլորություն), սատանայի անուններից մահմեդականության մեջ և *ջիննների* դասի անվանումը:

ՇԵՅԹԱՆ–ԴԱՂ, բրոնզի և երկաթի դարերի դամբարանադաշտ համանուն լեռան հս. լանջին (ՀՀ Լոռու մարզ, Այրում կայարանից արմ.): 1887–88–ին պեղել է Ժ. *Մորգանը* և գտածոներն ուղարկել Փարիզի Տրոկադերո ազգագր. թանգարան: Պեղված դամբարանները (138) 4 սալաքարից բաղկացած քառանկյուն արկղեր են՝ ծածկված մեկ կամ մի քանի մեծ սալաքարերով: Յուրաքանչյուր դամբարանում եղել է 1–ական կմախք (հանգուցյալը հողով չի ծածկվել)՝ զանազան իրերի հետ: Հայտնաբերվել են նաև բրոնզե, երկաթե առարկաներ, արծաթե մանյակ, կավե կճուճներ, սափորներ:

ՇԵՅԽ (արաբ. – բառացի՝ ծերունի), Արաբիայում իշխող տիրակալների և քչվոր ցեղերի առաջնորդների, մահմեդ. հոգևոր այրերի, դերվիշ. միաբանությունների առաջնորդների տիտղոս: Մերձ. և Միջին Արևելքի ժողդ–ների մոտ՝ գյուղ. համայնքի ղեկ., երբեմն՝ պարզապես հարգված անձ:

ՇԵՅԽ ՈՒԼ–ԻՍԼԱՄ (արաբ. – բառացի՝ իսլամի տոհմավագ), մահմեդ. իրավագետների (*մուֆթի*, մուջտահիդներ) և սուֆիների պատվ. տիտղոս (X դ–ից):

ՇԵՅՆ, **Շայն** (Schein), Յոհան Հերման (1586–1630), գերմանացի կոմպոզիտոր: Հեղինակ է հոգևոր կոնցերտների, մադրիգալների, կանցիոնալի (բողոք. խորալների 4–6–ձայնանի մշակումներ, 1627) և այլ երկերի:

ՇԵՅՆ Պավել Վասիլևիչ (1826–1900), հրեա բանահավաք, ազգագրագետ: Հեղինակ է «Ռուսական ժողովրդական երգեր» (1870), «Բելառուսական ժողովրդական երգեր» (1874), «Նյութեր՝ Հյուսիսարևմտյան երկրամասի ռուս բնակչության կենցաղի և լեզվի ուսումնասիրման համար» (հ. 1–3, հրտ., 1887–1902) ժող–ների:

ՇԵՅՆԳԼԻՆ Ալեքսանդր Եֆիմովիչ (1916–2017), հրեա ջերմաֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (1974): Սոց. աշխ. հերոս (1986): Աշխ–ները վերաբերում են գերկրիտիկ. հարաչափերով շոգու թերմոդինամիկ. հատկություններին, մագնիսահիդրոդինամիկ. գեներատորներին:

Լենինյան (1959), ԽՍՀՄ Պետ. (1976) մրց–ներ:

ՇԵՅՆԵՐ (Scheiner) Յուլիուս (1858–1913), գերմանացի աստղագետ: Աշխ–ները վերաբերում են աստղերի սպեկտր. և սպեկտրալուսաչափ. հետազոտություններին: Հ. *Ֆոգելի* հետ սկսել է աստղերի ճառագայթ. արագությունների ճշգրիտ որոշումը՝ ըստ այդ աստղերի սպեկտրների լուսանկարների:

ՇԵՅՆԵՐ Քրիստոֆ (1575–1650), գերմանացի աստղագետ և ֆիզիկոս: Հայտնաբերել է արևաբծերը (1611, անկախ Գ. Գալիլեյից և Յ. Ֆաբրիցիուսից), որոշել Արեգակի պտտման պարբերությունը և խավարածրի նկատմամբ պտտման առանցքի թեքությունը:

ՇԵՅՔ (անգլ.՝ shake – թափահարել), անգլ. ժամանակակից հանդիսապար: Երաժշտ. չափը՝ 4/4:

ՇԵՆԱԼՎ Վլադիմիր Նիկիտովիչ (1929–2010), ռուս. տնտեսագետ: ՌԳԱ թղթ. անդամ (1997): Աշխ–ները վերաբերում են դրամաշրջանառությանը, ֆինանսների ու վարկի, արժույթի, կապիտալի վերարտադր–յան և շուկայական տնտ–յան գործունեության խնդիրներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1980):

ՇԵՆԳԱՎԻԹ, պղնձի դարի հնավայր ՀՀ–ում՝ Երևանի հվ–արմ. մասում՝ Հրազդան գետի (այժմ՝ Երևանյան լճի) ձախ ափին՝ բլրի վրա: Բնակավայրը բաղկացած է կացարանների միակցված խմբից, շրջա–

պատված է խոշոր քարերով շարված պարսպով, որն ունի աղյուսե պատերով քառանկյուն աշտարակներ: Շ-ում բացվել են 4 հաջորդ. ժամանակաշրջանների մշակույթների շին. համալիրների շերտեր, որոնք վերաբերում են մ. թ. ա. IV–II հազ. ամյակների սկզբին: Հայտնաբերվել են շարժ. կլոր օջախներ՝ պատվանդաններով, ոսկրե ու քարե բրիչներ, մանգաղի կայծքարե շեղբեր, քարե աղորիքներ ևն:

ՇԵՆԳԵԼԱՅԱ Գեորգի Նիկոլայի (ծ. 1937), վրացի կինոռեժ., դերասան, սցենարիստ: ՎԽՍՀ ժող. արտիստ (1985): Ն. Մ. ***Շենգելայայի*** որդին, Է. Ն. ***Շենգելայայի*** եղբայրը: Նկարահանել է «Փիրոսմանի» (1970), «Վերա թաղամասի մեղեդիները» (1973), «Երիտասարդ կոմպոզիտորի ճանապարհորդությունը» (1985), «Եվ գնացքը գնում էր» (2005) և այլ ֆիլմեր:

ՇԵՆԳԵԼԱՅԱ Էլդար Նիկոլայի (ծ. 1933), վրացի կինոռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1988): Ն. Մ. ***Շենգելայայի*** որդին, Գ. Ն. ***Շենգելայայի*** եղբայրը: Նկարահանել է «Սպիտակ կարավան» (1964, Թ. Մելիավայի հետ), «Անսովոր ցուցահանդես» (1969), «Տարօրինակ մարդիկ» (1974), «Սամանիշվիլու խորթ մայրը» (1978), «Կապույտ լեռներ կամ Անհավատալի պատմություն» (1984), «Dog Rose» (1996) և այլ ֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1985):

ՇԵՆԳԵԼԱՅԱ Նիկոլայ Միխայիլի (1903–1943), վրացի կինոռեժ., սցենարիստ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1935): Գ. Ն. և Է. Ն. ***Շենգելայաների*** հայրը: Նկարահանել է «Էլիսո» (1928), «Քսանվեց կոմիսարները» (1933), «Ոսկեգույն հովիտ» (1937), «Հայրենիք» (1940) և այլ ֆիլմեր:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941):

ՇԵՆԳԵԼԻ Գեորգի Արկաղևիչ (1894–1956), ռուս. բանասեր, բանաստեղծ: Հեղինակ է «Տրակտատ ռուսական բանաստեղծության մասին» (1921), «Բանաստեղծության տեխնիկան» (1940) աշխ-ների, «Բասիլևսի խոհարարը: Բյուզանդական պատմություն» (1946) գր. միստիֆիկացիայի: Կատարել է թարգմ-յուններ:

ՇԵՆԻԵ (Chénier) Մարի Ժոզեֆ (1764–1811), ֆրանսիացի գրող, հրապարակախոս: Ֆրանսիայի ակադ-ի անդամ (1803): Ֆրանս. թատրոնում հեղ. կլասիցիզմի հիմնադիրը («Կառլոս IX կամ Դաս թագավորներին», բեմ.՝ 1789, հրտ.՝ 1790, «Կառլոս IX կամ Բարդուղիմեոսյան գիշեր»): Հեղինակ է «Ֆիլիպ II» (1803), «Տիբերիոս» (1805) և այլ ողբերգությունների, նաև երգիծ. գործերի, հեղ. երգերի:

ՇԵՆՅԱՆ Գրիգոր (ծ. 1935), խմբ., գրող, հաս. գործիչ: 1955–81-ին աշխատակցել է Բեյրութի մի շարք պարբ-ների: 1976-ից՝ ԱՄՆ-ում: 1981–91-ին՝ «Նոր կեանք» (Գլենդել) շաբաթաթերթի խմբ-հրտ.: 1991-ից՝ Լոս Անջելեսի հայրենակց. միությունների միացյալ մարմնի ատենապետ, 1993-ից՝ Հայ գրողների միության հիմնադիր-փոխատենապետ: Հեղինակ է «Ապահովագրութիւնը եւ իր պայմանները» (1963), «Տիկինս ըսավ թէ...» (1991), «Ամուսինս ըսաւ թէ...» (1993) պատմվածքների և հուշերի ժող-ների, «Մայթերու վրայ» (1994), «Մեր օրերուն հետ» (2005) վիպակների:

ՇԵՆՅԱՆ, Մուկդեն, ք. Չինաստանի հս-արլ-ում՝ Հուանհե գետի ափին, Լյաոնին պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 8,1 մլն (2010): Հիմնադրվել է մ. թ. ա. II դ-ում: 1625–44-ին եղել է մանջուր. պետության մայրաքաղաքը: Ցին հարստության օրոք (1844–1911) համարվել է Չինաստանի «երկրորդ մայրաքաղաքը»:

ՇԵՆՈՆ (Shannon) Կլոդ Էլվուդ (1916–2001), ամերիկացի ճարտարագետ և մաթեմատիկոս: Տեղեկույթի մաթ. տեսության ստեղծողներից: Աշխ-ները վերաբերում են ռելեահպակ. սխեմաների տեսությանը, կապի մաթ. տեսությանը, տեղեկույթին, կիբեռնետիկայինե: Շ-ի անունով կոչվել է թեորեմ:

ՇԵՆՍԻ, պրովինցիա Չինաստանի հս-արմ-ում: Տարածքը՝ 206 հզ. *կմ*^{2}, բն.՝ 37 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ ***Սիան***:

ՇԵՇՈՆԿ I, Եգիպտոսի փարավոն՝ մ. թ. ա. 950–929-ին: XXII (Լիբիական) հարստության հիմնադիրը: Արշավել է Հադկաստան և Հրեական թագավորություն:

ՇԵՊԻԼՈՎ Դմիտրի Տրոֆիմովիչ (1905–1995), խորհրդ. կուս. և պետ. գործիչ, տնտեսագետ: ՌԳԱ թղթ. անդամ (1953): 1952–56-ին՝ «***Պրավդայի***» գլխ. խմբ., 1955–57-ին՝ ԽՄԿԿ ԿԿ քարտուղար, 1956–57-ին՝ ԽՍՀՄ ԱԳ նախարար:

ՇԵՊԻՏԿՈ Լարիսա Եֆիմովնա (1938–1979), ռուս. կինոռեժ.: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1974): Է. Գ. ***Կլիմովի*** կինը: Նկարահանել է «Տապ» (1963), «Թևեր» (1966), «Դու և ես» (1972), «Վերելք» (1977) և այլ ֆիլմեր: Զոհվել է ավտովթարից՝ «Հրաժեշտ» ֆիլմի նկարահանման ժամանակ (ավարտել է ամուսինը):

ԽՍՀՄ Պետ. մրց. (1979, հետմահու):

ՇԵՍՏԱԼՈՎ Յուվան Նիկոլաևիչ (1937–2011), մանսի գրող: Հեղինակ է «Մենք ապրում ենք Հյուսիսում» (1961), «Սոռնինայի գաղտնիքը» (1976), «Ապաքինող կրակ» (1989) և այլ վիպակների, նաև բանաստեղծությունների, պոեմների, հրապարակախոս. երկերի, մանկ. գրքերի:

ՌԽՖՍՀ Մ. Գորկու անվ. Պետ. մրց. (1978):

ՇԵՍՏԱԿՈՎ Սերգեյ Վասիլևիչ (ծ. 1934), ռուս. գենետիկ: ՌԳԱ ակադ. (2000, թղթ. անդամ՝ 1987-ից): Աշխ-ները վերաբերում են միկրոօրգանիզմների գենետիկային և գենային ճարտարագիտ-յանը, ճառագայթ. գենետիկային: Ուսումնասիրել է գենետիկ. ռեպարացիաներն ու ռեկոմբինացիաները և գեների գործունեության կարգավորումները: ԽՍՀՄ Պետ. մրց. (1988):

ՇԵՍՏԻՆԱԿԻ Օլեգ Նիկոլաևիչ (1929–2009), ռուս գրող: Հեղինակ է «Կյանք: Բանաստեղծություններ և պոեմներ: 1947–1975» (1977), «Վստահում եմ ձեզ» (1980), «Բանավեճ» (1983), «Մայրցամաք» (1985), «Նովելներ սիրո մասին» (1987), «Եվայի խնձորը» (2005), «Հրեշտակները բնադրում են երկրի վրա» (2009) պատմվածքների, «Իմ Հայաստանը» (հայ.՝ 1979) բանաստեղծությունների ու պոեմների ժող-ների:

ՇԵՍՏՈՎ Լև (Յեգուդա Լեյբ Շվարցման, 1866–1938), հրեա փիլ., գրող: Ավանդ. փիլ-յանը հակադրել է «ողբերգության փիլիսոփայությունը» (հիմքում մարդկային գոյության անհեթեթությունն է), իսկ փիլ. մտահայեցողությանը՝ աստվածատուր հայտնությունը: Շ. կանխագուշակել է էկզիստենցիալիզմի հիմն. գաղափարները: Հեղինակ է «Մտահայեցողություն և հայտնություն» (հրտ.՝ 1964) և այլ աշխ-ների:

ՇԵՎԱԼԻԵ (Chevalie) Մորիս (1888–1972), ֆրանսիացի շանսոնիե, դերասան: Ստեղծել է Փարիզի «բուլվարային երգչի» դաս. տիպը: Նկարահանվել է «Լռությունը ոսկի է», «Կանկան», «Ֆաննի» և այլ ֆիլմերում: 1912–18-ին հանդես է եկել օպերետում:

ՇԵՎԱՐԴՆԱՁԵ Էդուարդ Ամվրոսիի (1928–2014), վրացի պետ. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1981): 1995–2003-ին՝ Վրաստանի նախագահ, 1965–72-ին՝ ՎԽՍՀ ՆԳ նախարար, 1972–85-ին՝ Վրաստանի կոմկուսի ԿԿ 1-ին քարտուղար, 1985–90-ին՝ ԽՍՀՄ ԱԳ նախարար, 1992–95-ին՝ Վրաստանի Պետ. խորհրդի նախագահ:

ՇԵՎՉԵՆԿՈ Վլադիմիր Յարոսլավովիչ (ծ. 1941), ռուս քիմիկոս: ՌԳԱ ակադ. (2000, թղթ. անդամ՝ 1994-ից): 1998-ից՝ ՌԳԱ սիլիկատների քիմիայի ինստ-ի տնօրենն: «Ապակու ֆիզիկա և քիմիա» (ռուս.) հանդեսի գլխ. խմբ. (1998-ից): Աշխ-ները վերաբերում են անօրգ. նյութերի ֆիզքիմիայի և տեխնոլոգիայի բնագավառին:

ՌԴ Պետ. (2002), Պ. Լ. Կապիցայի, Դ. Ի. Մենդելեևի (2007) անվ. մրց-ներ:

ՇԵՎՉԵՆԿՈ Տարաս Գրիգորևիչ (1814–1861), ուկրաինացի բանաստեղծ, նկարիչ: Ուկր. նոր գրկ-յան հիմնադիրը: 1833-ին փրկագնվել է ճորտությունից (Կ. Պ. Բրյուլովի, Վ. Ա. Ժուկովսկու և ուր. նախաձեռնությամբ): «Կիրիլ-Մեֆոդիի եղբայրություն» հակաճորտատիր. գաղտնի ընկ-յանը մասնակցելու և հեղ. բանաստեղծություններ գրելու համար Շ-ին ձերբակալել են: 1858-ին ներումով ազատվել է և վերադարձել Ս. Պետերբուրգ: Հեղինակ է «Կոբզար» (1840, հայ.՝ 1939), «Երազ» (1844), «Նորահավատները» (1857), «Դիվահարը» (1857), «Մարիա» (1859) և այլ պոեմների: Շ-ի որոշ բանաստեղծությունների հիման վրա գրել են երաժշտություն. «Կտակ», «Խոհեր իմ, խոհեր իմ», «Մինչում, հառաչում է Դնեպրը լայնարձակ» գործերը դարձել են ժող. երգեր: Նրա ստեղծագործությամբ ուկր. արվ-ում սկզբնավորվել է ռեալիստ. ուղղությունը [«Կատերինա», 1842, «Անառակ որդու առակը» (1856–57, նկարաշար)]: Հայ. հրատարակվել են նաև «Պոեմներ» (1964) ժող-ը, «Կտակ» (1990) բանաստեղծությունը:

ՇԵՎՉԵՆԿՈ Ֆաինա Վասիլևնա (1893–1971), ռուս. դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1948): 1914-ից՝ ՄԳԹ դերասանուհի (Մատրյոնա, Կաբանիխա՝ Ա. Ն. Օստրովսկու «Ձերմ սիրտ», «Ամպրոպ», Վասիլիսա՝ Մ. Գորկու «Հատակում», ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1943, 1946):

ՇԵՎՐՅՈԼ (Chevreul) Միշել Էժեն (1786–1889), ֆրանսիացի քիմիկոս-օրգանիկ: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1853): Առաջիններից է հետազոտել բուս. և կենդ. ճարպերի կառուցվածքը, բացատրել դրանց օճառացումը, բացահայտել կրեատինը (1835), մի շարք բուս. գունանյութեր, անջատել է որոշ ճարպաթթուներ: 1825-ին Ժ. Լ. Գեյ-Լյուսակի հետ արտոնագրել է ստեարինային մոմերի պատրաստման եղանակը:

ՇԵՎՐՈ (ֆրանս.՝ chevreau – ուլ), այծի մորթու դարաղմամբ ստացվող կաշի: Լավագույն տեսակներն ստանում են մատղաշ այծերի մորթուց:

«ՇԵՎՐՈՆ», նավթի և գազի արդյունահանման և վերամշակման նավթաքիմ. խոշոր ընկ. ԱՄՆ-ում: Հիմնադրվել է 1879-ին: Կենտրոնատեղին՝ Սան Ռամոնում (ԱՄՆ, Կալիֆոռնիա):

ՇԵՐ (Cher, Լապիեր-Սարգսյան Շերիլին Ջոնի, ծ. 1946), կինոդերասանուհի,

երգչուհի: 1970–75-ին ամուսնու՝ երգիչ Սանի Բոնոյի հետ հանդես է եկել «Սանի ընդ Շեր» ռոք երկյակում: Նկարահանվել է «Միլքվուդի գաղտնիքը», «Դիմակ», «Լուսնոտը», «Հավերժահարսը», «Թեյ Մուսոլինիի հետ», «Խստվիքի վիուկները» և այլ ֆիլմերում: Նկարահանել է «Եթե պատերը կարողանային խոսել» (1995) ֆիլմը: Հեղինակ է «Միշտ լավ կազմվածքով» գրքի: 1993-ին բարեգործ. առաքելությամբ այցելել է ՀՀ:

«Օսկար» (1984, 1988), Կաննի միջազգ. կփ (1984) մրց-ներ:

ՇԵՐԱՄ (Տալյան Գրիգոր Կարապետի, 1857–1938), աշուղ: Վազգեն ***Տալյանի*** հայրը: Շ-ի հայրենասիր. երգերը («Անդրանիկին» ևն) տպագրվել են «Երգիչ Գրիգոր Տալյանի քնարը» (1920) և «Գանգատի շանթեր» (1905) գրքույկներում: 1905-ին Կոմիտասը նոտագրել է նրա «Ալ ու ալուան ես հագել» երգը: 1914-ին աշուղին «Շ.» անվանակոչել է Հովհաննես Հովհաննիսյանը (երգերը շերամի նման նուրբ է նկատել): 1915-ին լույս են տեսել Շ-ի «Անզուսպ արշաւ» ժող. և այլ երգեր: Ճանաչված են Շ-ի «Սարե՛ր, կաղաչեմ», «Նա մի նազ ունի», «Քեզանից մաս չունիմ», «Էլի երկինս ամպել է», «Շորորա», «Դու իմ մուսան ես», «Միրուններ», «Աննման փերի» և այլ երգեր: Ձարգացրել է քնար. եղանակավոր երգայնությունը, եղանակների գունեղությունն ու հուզականությունը:

ՇԵՐԱՄ թթենու, մետաքսագործ (Bombyx mori), իսկական մետաքսագործների ընտանիքի թիթեռ: Հայաստան է ներմուծվել VI–VII դդ-ում (հավանաբար՝ Պարսկաստանից): Թրթուրը (շերամորդ) սնվում է թթենու տերևներով: Հասուն թրթուրները չեն սնվում, արտադրում են մետաքսահյութ, 3 օրվա ընթացքում իրենց շուրջը գլխի ճոճանակաձև շարժումներով հյուսում են մետաքսի ամուր պատյան՝ բոժոժ, որի թաղանթը կազմված է 1000–1500 *մ* երկ-յան չընդհատվող մետաքսաթելից:

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, շերամորդի բուծումը՝ բոժոժ (բնական մետաքսահումք) ստանալու նպատակով: Շ. հայտնի էր մ. թ. ա. III հզ-ամյակում Չինաստանում: Հայաստանում Շ. մուտք է գործել VI–VII դդ-ում և հատկապես զարգացած է եղել Արցախում, որի հիմքի վրա գործել է «Ղարմետաքս» կոմբինատը:

ՇԵՐԱՄՈՐԴԵՐ, գիշեր. թիթեռների (իսկական Շ., կեչու Շ. ևն) ընդհ. անվանումը, որոնց թրթուրները հարսնեկավորման համար հյուսում են մետաքսաբոժոժ: Շ. են կոչվում նաև թիթեռների այլ ընտանիքներ, բոժոժահյուսեր (օր.՝ սոճու Շ.), սիրամարգաչք (օր.՝ չին. և ճապոն. կաղնու Շ.):

ՇԵՐԲՅՈՒԼԻԵ (Cherbuliez) Անտուան Էլիզե (1797–1869), շվեյցարացի տնտեսագետ: Ժ. Շ. ***Միամոնդիի*** տեսությունը միավորել է Դ. Ռիկարդոյի տեսության բաղադրիչների հետ:

ՇԵՐԵՄԵՏԵՎ Բորիս Պետրովիչ (1652–1719), գեն-ֆլդմ. (1701), կոմս (1706), Պետրոս I-ի զինակիցը: 1681-ից՝ վոյեվոդա: Մասնակցել է Ղրիմի և Ազովի արշավանքներին: 1700–21-ի Հս. պատերազմի ժամանակ՝ զորքերի հրամ. Մերձբալթիկայում, Ուկրաինայում և Պոմերանիայում, Պոլտավայի ճակատամարտում՝ զորքերի գլխ. հրամ.:

ՇԵՐԵՄԵՏԵՎՍԿԻ Նիկոլայ Նիկոլաևիչ (1916–2003), ռուս. մեխանիկոս: ՌԳԱ ակադ. (1984): Սոց. աշխ. հերոս (1986): Աշխ-ները վերաբերում են տիեզ. օբյեկտների էլեկտրամեխ. համալիրների, ուժ. գիրոսկոպիկ սարքերի, հետևող շարժաբերի, էլեկտրաէներգիայի ստատիկ փոխակերպիչների հետազոտություններին:

ԽՍՀՄ Պետ. (1949, 1967), Լենինյան (1978) մրց-ներ:

ՇԵՐԵՆՑ Ազատ Արմենակի (1913–1994), դերասան: ՀՀ վաստ. արտիստ (1965): 1937–68-ին՝ Լենինականի դրամատիկ. թատրոնի դերասան (Սուր՝ Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար», Ռոզենկրանց՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», ևն), 1970-ից նկարահանվել է կինոյում [«Մենք ենք, մեր սարերը», 1969, «Տղամարդիկ», «Հայրիկ», (երկուսն էլ՝ 1972), «Կտոր մը երկինք», 1980, «Հատակում», 1987, բոլորը՝ Հայֆիլմ, ևն]:

ՇԵՐԵՆՑ Գևորգ (1848–1921), բանահավաք, ազգագրագետ, բանաստեղծ: 1896-ից՝ Թիֆլիսում: Հեղինակ է քնար. բանաստեղծությունների («Սրտի թարգման կամ բանաստեղծութիւններ», մաս 1, 1884), «Վանայ սազ» (մաս 1, 2, 1885, 1899) բանահյուս-ազգագր. ժող-ի, նաև «Սրբավայրեր» (1902), «Ալթուն դերեսի կամ գիշեր Բաղէշի բանտում. 1893–96» (1910) գործերի: Շ-ի բանաստեղծությունների հիման վրա ստեղծվել են երգեր («Հերիք որդյակ այսքան տարվա տառապանք» ևն):

ՇԵՐԵՓ, 1. երկար պոչով փայտե կամ մետաղե մեծ գդալ՝ կերակուրը խառնելու կամ այլ ամանի մեջ լցնելու համար: Պոչը հաճախ զարդարվում է փորագիր երկրչփ. նախշերով, ծայրը՝ ձևավոր, կեռ կամ փոքր անցքով՝ կախելու համար: 2. (Տեխ.) ներսից հրահեստ աղյուսով պատած պողպատե կամ թուջե անոթ (մինչև 480 *տ* տարողության), որը նախատեսված է հալած մետաղի, խարամի և շտեյնի (միջանկյալ արգասիք) կարճաժամկետ պահպանման, տեղափոխման ու լցաբաշխման համար: 3. Հողափոր և ամբարձիչ-տեղափոխող մեքենաների Շ. աշխ. մարմին է, որով դրանք բռնում, նյութի մի մասն անջատում են ընդհ. զանգվածից և տեղափոխում են բեռնման վայր:

ՇԵՐԵՓԱՁՈՒԿ (Lota lota), **նալիմ**, ձողաձուկազգիների ընտանիքի ձուկ: Երկ.՝ 50–60 *սմ* (մինչև 1,7 *մ*), զանգվածը՝ 1,5–1,6 (մինչև 3,2) *կգ*: Հանդիպում է Եվրասիայի և Հս. Ամերիկայի քաղցրահամ ջրերում:

ՇԵՐԵՓՈՒԿ, ***անպոչ երկկենցաղների*** թրթուրը: Ի տարբերություն հասուն ձևերի՝ ունի խոիկներ, երկխոռոչավոր սիրտ, երկար պոչ: Չկներին բնորոշ այդ հատկանիշներն անհետանում են կերպարանափոխության ժամանակ, և գորտիկը ցամաք է դուրս գալիս 2 զույգ վերջույթներով:

ՇԵՐԵՓՈՒԿԱԽՈՏ (Potamogeton), գետաբույս, շերեփուկախոտազգիների ընտանիքի բազմամյա կոճղարմատավոր ջր. խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 100 տեսակ, ՀՀ-ում՝ 12 (լողացող, փայլուն, սանրավոր, ալպիական և այլ Շ-եր): Աճում են չհոսող, դանդաղահոս կամ աղի ջրերում՝ երբեմն առաջացնելով ընդարձակ մացառուտներ: Ձկների և այլ կենդանիների կեր է:

ՇԵՐԻՆԳՓՈՆ (Sherrington) Չառլզ Սքոթ (1857–1952), անգլիացի ֆիզիոլոգ: Ս. Պետերբուրգի (1915), Ռուսաստանի (1917), ԽՍՀՄ (1925) ԳԱ-ների արտ. թղթ. անդամ: Ստեղծել է ընկալիչ դաշտերի վերաբերյալ ուսմունք, մշակել նյարդ. համակարգի ինտեգրող գործունեության մասին հայեցակարգ: Առաջադրել է սինապսների մասին պատկերացում և որոշել նրանց դերը նյարդամկան. հաղորդման մեխանիզմներում: Նոբելյան մրց. (1932, Է. Դ. ***Էդրիանի*** հետ):

ՇԵՐԻՇԵՎ Վասիլի (1902–1940), ռուս բեմանկարիչ: 1928–38-ին՝ Լենինականի թատրոնի նկարիչ: Ձևավորել է Ս. Բաղդասարյանի «Սարոկկո» (1929), Վ. Կիրշոնի «Հաց» (1931), Մ. Գորկու «Հատակում» (1932), Ն. Պոգոդինի «Իմ բարեկամը» (1933), Մ. Ձանանի «Շահնամե» (1935), Կ. Գոլդոնիի «Հյուրանոցի տիրուհին» (1936), Լ. Միքայելյանի «Գոշ» (1936) և այլ բեմադրություններ:

ՇԵՐԻՖ (անգլ.՝ sheriff), 1. Մեծ Բրիտանիայի, Իռլանդիայի, ԱՄՆ-ի կոմսություններում և վոմ-ներում գործադիր իշխանության պաշտոնատար անձ: 2. (Արաբ.՝ «շարիֆ» – ազնիվ, բարեկիրթ, պատվավոր) անձի պատվ. կոչում մահմեդ. երկրներում, որի ծագումնաբանությունը կապվում է ***Մուհամմեդի*** հետ: Առավել հատնի հարստություններից են Մեքքայի Շ.:

ՇԵՐԼՈԿ ՀՈԼՄՍ (Sherlock Holmes), գր. կերպար, Ա. Կ. ***Դոյլի*** բազմաթիվ գործերի հերոսը (անվանումը՝ Օ. Ուի. ***Հոլմսի*** անունից): Խուզարկու, պաշտոն. ոստիկանությանը հակադրվող Շ. Հ-ի մասին գրվել է մոտ 56 պատմվածք, 4 վեպ, նկարահանվել բազմաթիվ ֆիլմեր:

ՇԵՐՄԱԱՐԿ (Sharmaarke) Աբդիռաշիդ Ալի (1919–1969), Սոմալիի Հանրապետության նախագահ՝ 1967–69-ին, 1-ին վարչապետը՝ 1960–64-ին: 1943-ին՝ Սոմալիի երիտասարդ. ակումբի (1947-ից՝ Երիտասարդ սոմալիացիների լիգա) հիմնադիրներից:

ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ (Շիրմազանյան) Գալուստ Հարությունի (1807–1891), բանահավաք, հաս. գործիչ, դրամատուրգ: 1864–65-ին՝ Թիֆլիսի քաղաքագլուխ: Հեղինակ է «Իմ նշանածն Արազն ա», «Ազգային հարսանիք» (երկուսն էլ՝ 1861) չափածո, «Նկարագրութիւնք ինչ-ինչ գործոց Կարապետի…» (1841) երգիծ. և այլ պիեսների: Կազմել է «Անեկդոտներ, զուարճալի զրոյցներ, համառօտ դէպքեր եւ առակներ մեծ մասամբ ազգային կեանքից առած» (1878) ժող-ը: Պատմության մասին իր աշխ-ներն ամփոփել է «Նիւթեր ազգային պատմութեան համար: Երեւելի հայազունք ի Պարսկաստան» (1890, Իզմիրյան մրց.՝ 1889) գրքում:

«ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ ԴԱՐԲԱՍ», թատերասրահ Թիֆլիսում: Հիմնադրվել է 1836-ին՝ Գալուստ ***Շերմազանյանի*** նախաձեռնությամբ: Նրա երկհարկանի քարաշեն տունը վերակառուցվել, հարմարեցվել է թատեր. շենքի, որտեղ բեմադրվել են պիեսներ, իտալ. օպերաներ: Գործել է մինչև 1865-ը:

ՇԵՐՄԱՆ (Sherman) Ուիլյամ Թեքումսե (1820–1891), ամերիկ. բանակի գեն. (1869): Քաղաքաց. պատերազմի ժամանակ (1861–65) հյուսիսցիների բանակի հրամ.: 1869–83-ին՝ ԱՄՆ-ի բանակի գլխ. հրամ.:

ՇԵՐ–ՇԱՀ (Շեր-խան, 1486–1545), Բիհարի (Հնդկաստանի հս-արլ-ում) աֆղան տիրակալ, որը 2 ճակատամարտերում հաղթել է Մեծ Մողոլ Հումայունին և գրավել նրա գահը: 1539–45-ին՝ Մողոլ. կայսրության կառավարիչ: Սուր հարստության հիմնադիրը:

ՇԵՐՊԱՆԵՐ, *շերպեր* (ինքնանվանումը՝ շարկիոմբո), տիբեթ–բիրմ. ժողդ Նեպալում (154,6 հզ., 2001) և Հնդկաստանում (18,3 հզ., 2001): Լեզուն՝ շերպա, մատենագրությունը հիմնված է տիբեթ. և դևանագարի գրի վրա:

ՇԵՐՎԻՆՄԿԻ Սերգեյ Վասիլևիչ (1892–1991), ռուս թարգմանիչ, բանաստեղծ: ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1967): Թարգմանել է Ներսես Շնորհալու, Նահապետ Քուչակի, Սայաթ–Նովայի, Դ. Վարուժանի, Սիամանթոյի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի ստեղծագործություններից, «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք տեքստի մի մասը, Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը: Հեղինակ է «Քնարերգություն: Բանաստեղծություններ Իտալիայի մասին» (1924) ժող–ի, «Օստ–Ինդիա» (1933) վեպի, նաև մանկ. գրքերի, «Ռիթմ և դատողություն» (1961, Ա. Ս. Պուշկինի մասին) գրականագիտ. աշխ–յան, Ա. Ա. Ախմատովայի մասին հուշագրության (հրտ.՝ 1997):

ՇԵՐՏ, զենքի ինագույն տեսակ: Զևը հայտնի չէ: Ըստ Մովսես Խորենացու՝ Հայաստանում գործածվել է դեռևս Տիգրան Երվանդյանի օրոք (մ. թ. ա. IV դ–ի 1–ին կես): Շերտավորներ (շերտափակ) զորատեսակի մասին վկայում է նաև Փավստոս Բուզանդը:

ՇԵՐՏԱԳՐՈՒԱԿԱՆ ՍՅՈՒՆԱԿ, գծագիր, որը հատուկ պայման. նշաններով, ընդունված մասշտաբով պատկերում է ապարների շերտերի հաջորդականությունը և հարակից շերտագր. ստորաբաժանումների միջև հպումների բնույթը: Սովորաբար Շ. ս–ի վրա տեղավորում են շերտագր. միավորումների անվանումը (կամ նշանը), նրանց երկրբ. հասակը, հաստությունը, քարաբան. և ինէաբան. բնութագրերը:

ՇԵՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ, 1. *երկրաբանության* բաժին. ուսումնասիրում է երկրբ. մարմինների ձևավորման հաջորդականությունը և նրանց սկզբն. տարած. փոխհարաբերությունները: 2. **Հնագիտական Շ.**, մշակութ. շերտագոյացումների, դրանց տակ կամ վրա տարածված ապարների ու նստվածքների հաջորդականությունը: Նպատակը շերտերի ու ենթաշերտերի (նաև կառույցների, դամբարանների, իրերի) հարաբեր. թվագրումը բացահայտելն է: Հնագիտ. հուշարձանների Շ. ճշտվում է ուղղահայաց կտրվածքների ուսումնասիրությամբ: Հնագիտ–յան այլ, ինչպես նաև բնական գիտ–յունների մեթոդների (տիպաբան. մեթոդ, ինագիտ. թվագրում, երկրբ. ժամանակագրություն) օժանդակությամբ հարաբեր. շերտագր. թվագրումից անցնում են բացարձակ թվագրման: Բնակավայրի կամ դամբարանադաշտի տարածքային ամի հաջորդականությունը հնագիտ–յան մեջ կոչվում է հորիզոն. Շ.: 3. (Տեխ.) մարմնի ներքին կառուցվածքի շերտաշերտ, չքայքայող ուսումնասիրության մեթոդ՝ նրա տարբեր հատվող ուղղություններով բազմակի լուսադիտմամբ, որոնց թիվը հասնում է $10–10^6$ (այսպես կոչված՝ տեսածրող լուսադիտում): Ըստ լուսադիտման ճառագայթման տեսակի՝ տարբերում են էլեկտրամագնիս. Շ. [օր.՝ ռենտգեն., գամմա–Շ. և մագնիս. կամ միջուկամագնիս–ռեզոնանս. (ՄՄՌ) Շ.], փնջային Շ. (օր.՝ պրոտոն), ուլտրաձայն. Շ. ևն: Շ–յան միջոցով ստանում են մինչև 2 *ամ* հաստ–յան շերտերի պատկերներ: Առավել մշակված է 1960–ական թթ–ին ստեղծված ռենտգեն. Շ.: Շ. կիրառվում է բժշկ. ախտորոշման համար, երկրաֆիզիկայում, արդ. ներսադիտման մեջ և այլուր: Մեծ ճշգրտության և համեմատաբար անվտանգության շնորհիվ բժշկության մեջ լայնորեն տարածվել է ՄՄՌ Շ.:

ՇԵՐՏԱՄԿՅՈՒԻ (Eutamius sibiricus), ***ասիական շերտասկյուռ, գետնասկյուռ***, կրծողների կարգի շերտավոր սկյուռների ընտանիքի կաթնասուն կենդանի: Հայտնի է մոտ 18 տեսակ՝ Հս. կիսագնդի անտառներում: Մարմնի երկ.՝ մինչև 17, պոչինը՝ մինչև 12 *սմ*, մեջքին կան երկայն. 5 սև շերտեր: Գլխաքանակի շատացման դեպքում վնասում է հացահատիկ. և բանջարանոց. բույսերը:

ՀՀ–ում հանդիպում է 2 տեսակ՝ պարսկ. և փոքրասիական սկյուռները:

ՇԵՐՏԱՎՈՐ ԿԵՏԱՁՈՒԿ (Balaenoptera acutorostrata), ***անապատ կետերի*** ենթակարգի ծով. կաթնասունների ընտանիք: Երկ.՝ 6–33 *մ*: Փորի և կոկորդի վրա կան երկայնակի շերտեր՝ ծալքեր: Տարածված է 6 տեսակ՝ ֆինվալ, կապույտ կետ, Բրայդի շերտավոր կետ, սեյվալ, երկարադունչ կուզիկ կետեր: 3 տեսակ գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում, 4 տեսակ պահպանվում է:

ՇԵՐՏԱՎՈՐ ՄԿՅՈՒՌՆԵՐ (Spermophilus), ***սկյուռների*** ընտանիքի կաթնասունների սեռ: Հայտնի է 15 տեսակ: Տարածված են Աֆրիկայում՝ Փղոսկրի ափից և Սիեսա լեոնեից մինչև Անգոլայի և հվ. արմ. Աֆրիկայի հվ. մասերը:

ՇԵՐՏԱՎՈՐ ՍՊԵԿՏՐ, *սպեկտր*, որը կազմված է մեծ թվով մոտիկ դասավորված բաղադրիչներով առանձին շերտերից: Շ. ս–ները հատուկ են մոլ–ների առաքման ու կլանման սպեկտրներին և պայմանավորված են մոլ–ներում էներգետիկ բարդ անցումներով: Տես նաև ***Մոլեկուլային սպեկտրներ***:

ՇԵՐՖ (Schärf) Ադոլֆ (1890–1965), Ավստրիայի դաշն. նախագահ՝ 1957–ից: 1945–57–ին՝ դաշն. կառ–յան փոխկանցլեր և Ավստրիայի Սոց. կուս–յան նախագահ:

ՇԵՓԱՐԴ (Shepard) Ալան (ծ. 1923), ԱՄՆ առաջին աստղագնացը, ՌԾՈՒԻ պաշտոնաթող դերծովակալ: Թռել է «Մերկուրի» (1961–ի մայիս) և «Ապոլոն–14» տիեզերանավերով՝ վայրէջք կատարելով Լուսնի վրա (1971–ի հունվ–փետր.):

ՇԵՓԼԻ (Shapley) Լլոյդ Սթաուել (1923–2016), ամերիկացի տնտեսագետ և մաթեմատիկոս, Ազվ–ների և գիտ–յունների ամերիկ. (1974) և ԱՄՆ ազգ. (1979) ակադ–ների անդամ: Աշխ–ները վերաբերում են կայուն բաշխման տեսության և շուկայի գործն. մողելավորման խնդիրներին:

Նոբելյան մրց. (2012, Է. *Ռոթի* հետ):

ՇԵՓԼԻ, Շափլի (Schapley), Հարլոու (1885–1972), ամերիկացի աստղագետ: Աշխ–ները վերաբերում են աստղ. աստղագիտ–յանը (փոփոխ. աստղերի, Գալակտիկայի կառուցվածքի և այլ հետազոտություններ) և արտագալակտիկ. աստղագիտ–յանը (գալակտիկաների բաշխվածությանը տարածության մեջ ևն):

ՇԵՓՈՐ, մունդշտուկավոր փողավոր երաժշտ. գործիք (առանց կափույրների): Շ–ով արտաբերվում են միայն բնական հնչյունաշարի տոները: Օգտագործվում է փող., ջազ., էստրադ., ռազմ. և այլ նվագախմբերում:

«ՇԵՓՈՐ», գր–պատմագիտ. հանդես (1912–13, Բուխարեստ): Հայ. առաջին պարբ–ը Ռումինիայում: Խմբ–հրտ.՝ Լևոն Շահազիզյան:

ՇԵՔ *մարդու*, անատոմ. շրջան, որն առջևից սահմանազատված է ենթացայլային անկյան գագաթով կամ աղեղով, հետևից՝ պոչուկի կատարով, դրսից՝ նստաթմբերով: Կազմում է կոնքի հատակը: Մանկաբարձության մեջ Շ. են անվանում սեռ. մեծ շուրթերի հետին կպման և հետանցքի միջև ընկած տարածությունը:

ՇԵՔԵՐՋՅԱՆ Հայկ Հակոբի (1886–1966), ԱՄՆ–ի բանակի բրիգադի գեն. (1942): ԱՀՊ–ի ժամանակ Հունաստանում եղել է դեսպանության ռազմ. կցորդի օգնական, ապա դաշնակից զորքերի կազմում կռվել Մերձ. Արևելքում: Մասնակցել է ***Արևելյան լեգեոնի*** ստեղծմանը: ԵՀՊ–ից հետո՝ 1946–ին զորացրվել է, զբաղվել հայ փախստականների տեղավորման հարցերով:

ՇԵՔԻ ՊԱՏՎԱԾՔ, *շեքի* փափուկ հյուսվածքների անատոմ. ամբողջության խախտումը: Առաջանում է վնասվածքների, առավել հաճախ՝ ինքնաբեր ծննդաբերությունների ընթացքում՝ հյուսվածքների չափից ավելի գերձգվածության հետևանքով, հազվադեպ՝ սեռ. հարաբերության ժամանակ: Արհեստ. ճանապարհով Շ. պ. առաջացնում են ծննդօգնության միջամտությունների դեպքերում: Շ. պ–ները կարող են բարդանալ հետծննդյան հիվանդություններով, իսկ պատռվածքները չկարելու դեպքում՝ առաջանալ սեռ. օրգանների արտանկում և իջվածք:

ՇԵՔԼԻ (Sheckley) Ռոբերտ (1928–2005), ամերիկացի գրող: Գիտաֆանտաստիկ գրկ–յան ներկայացուցիչ: Հեղինակ է «Որտեղ ոտք չի դրել մարդը» (1954), «Ռոբոտ, որն ինձ էր նման» (1978), «Ռոբերտ Շեքլիի զարմանալի աշխարհները» (1979) և այլ երգիծ. պատմվածքների շարքերի, ««Անմահություն» միավորումը» (1958), «Հրաշքների կոորդինատները» (1968) և այլ վեպերի: Հայ. հրատարակվել է «Մտքի բուրմունքը» (1984) ժող–ը:

ՇԵՔԼԻՏՈՆ (Shackleton) Էռնեստ Հենրի (1874–1922), Անտարկտիդայի անգլիացի հետազոտող: 1901–03–ին մասնակցել է Ռ. *Սքոթի* արշավախմբին: 1908–09–ին գլխավորել է «Նիմրոդ» նավի արշավախումբը: Անտարկտիդա հասնելու նպատակով 1914–17–ին Շ–ի արշավախումբը հետազոտել է Քոտսի Երկրի ափերի մի մասը: 1921–ին «Քվեստ» նավով կրկին ուղևորվել է Անտարկտիդայի ափերը, սակայն ճանապարհին մահացել է: Շ–ի անունով են կոչվել ափ, ծանծաղուտ. սառցադաշտ, նեղուց՝ Անտարկտիդայում, 3 լեռ՝ Անտարկտիդայում, Կանադայում և Արլ. Գրենլանդիայում:

ՇԵՔՍՊԻՐ (Shakespeare) Վիլյամ (1564–1616), անգլիացի դրամատուրգ, բանաստեղծ: Եղել է նաև «Գլոբուս» թատրոնի դերասան: Հեղինակ է «Վեներան և Ադոնիսը» (1593), «Լուկրեցիայի առնանգումը» (1594), «Սիրահարի տրտունջը» (1609) և այլ պոեմների, «Հենրի VI» (մաս 1–3, 1590–92), «Ռիչարդ III» (1593), «Ջոն արքա» (1596) և այլ քրոնիկոնների, «Սխալների կատակերգություն» (1592), «Անսանձ կնոջ սանձահարումը» (1593), «Վենետիկի վաճառականը» (1596), «Շատ աղմուկ ոչնչից» (1598), «Վինձորի զվարճասեր կանայք» (1598), «Տասներկուերորդ գիշեր» (1600) և այլ կատակերգությունների: Շ–ի ստեղծագործության գլուխգործոցներն են «Ռոմեո և Ջուլիետ» (1595), «Հուլիոս Կեսար» (1599–1600),

«Համլետ» (1601), «Օթելլո» (1604), «Լիր արքա» (1605), «Մակբեթ» (1606), «Անտոնիոս և Կլեոպատրա» (1607), «Կորիոլան» (1607) ողբերգությունները, որտեղ պատկերել է խոհուն, հզոր կամքով, զորեղ և համամարդկային զգացումներով, անարդարության դեմ ընդվզող բացառիկ անհատականությունների: Հեղինակ է նաև քնարափիլ. «Սոնետներ» (1592–1600, հրտ.՝ 1609) ժող–ի: Շ–ի ստեղծագործությունների զգալի մասը թարգմանվել է հայ., բեմադրվել հայ բեմում: Լավագույն թարգմանիչներից են Հովհաննես Խան Մասեհյանը, Խաչիկ Դաշտենցը, Հենրիկ Սևանը և ուր.: ՀՀ ԳԱԱ արվ–ի ինստ–ում Ռուբեն *Զարյանի* ղեկավարությամբ 1966–ին հիմնադրվել է *Շեքսպիրագիտության կենտրոն*:

ՇԵՔՍՊԻՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի, հիմնադրվել է 1966–ին (ղեկ.՝ Ռուբեն *Զարյան*): Ջրաղվում է Վ. Շեքսպիրի երկերի հայ. թարգմ–յամբ, հայ թատրոնում նրա պիեսների բեմադրություններով և դրանց պատմությամբ: Հրատարակել է «Շեքսպիրի քրոնիկներ» (հ. 1–2, 1972–73), «Շեքսպիրական» (հայկ. Շեքսպիր. տարեգիրք) (հ. 1–7, 1966–85), Ռ. Զարյանի «Էջեր հայկական Շեքսպիրապատումից» (հ. 1, 2, 1979, 1981) և այլ գրքեր: 1994–ից գործում է որպես ԳՀ խումբ:

ՇԵՔՍՊԻՐՅԱՆ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ (Royal Shakespeare Theatre), անգլ. դրամատիկ. թատրոն (մինչև 1961–ը՝ Շեքսպիրյան մեմորիալ թատրոն): Հիմնադրվել է 1879–ին Ստրատֆորդ–օն–Էյվոնում: Բեմադրվում են Վ. Շեքսպիրի պիեսները, անցկացվում փառատոներ: 1960–ից Լոնդոնում գործում է թատրոնի մասնաճյուղը:

ՇԵՖԻԼԴ (Sheffield), ք. Մեծ Բրիտանիայում՝ Դոն գետի ափին: Բն.՝ 415,2 հզ. (2010): Հվ. Յորքշիրի կոնուրբացիայի (քաղաք. ագլոմերացիա) կենտրոններից (բն.՝ 1,3 մլն): Ծանր արդ–յան խոշոր կենտրոն է:

ՇԵՖՆԵՐ Վադիմ Սերգեևիչ (1914/15–2002), ռուս գրող: Հեղինակ է «Տխրության քույրը» (1970) վիպակի, «Հիշողության նրբանցք» (1976), «Կրակի ճարտարապետություն» (1997) բանաստեղծությունների, «Ուշացած հրաձիգը» (1987) վիպակների ժող–ների:

ՌԽՖՍՀ Մ. Գորկու անվ. Պետ. (1985), ՌԴ Ա. Ս. Պուշկինի անվ. (1997) մրց–ներ:

ՇԵՖՖԵՐ (Schaeffer) Պիեռ (1910–1995), ֆրանսիացի կոմպոզիտոր, երաժշտության տեսաբան, ճարտարագետ–ձայնագետ: Կոնկրետ երաժշտության հիմնադիրը (1940–ականների վերջ), որը քննադատվել է 1960–ական թթ–ին: Գրել է «Սիմֆոնիա՝ մեկ մարդու համար» (1950, Պ. Անրիի հետ), «Օրփեոս–51», «Օրփեոս–53» օպերաները:

ՇԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (արաբ.՝ շիա – կուսակցություն, հետևորդներ), մահմեդականության 2 հիմն. ուղղություններից: Ծագել է VII դ–ում՝ որպես Ալի իբն Աբի Թալիբի կողմնակիցների միություն: Իմամների թվի հարցի շուրջ վեճերի հետևանքով VIII դ–ում Շ. բաժանվել է մի քանի հոսանքների: *Սուննիների* հետ ընդունելով Ղուրանի, կրոն. դոգմաների և ծիսակարգերի մասին դրույթները՝ շիաները հավատում են նաև իմամների իշխանության աստված. բնույթին և միայն նրանց են համարում *Մուհամմեդի* իսկական հետևորդներ, չեն ընդունում սուննիական խալիֆներին: Շ. Իրանի պետ. կրոնն է, տարածված է նաև Ադրբեջանում, Եմենում, Իրաքում, Բահրեյնում և այլուր:

ՇԻԲԻՆ ԷԼ ԿՈՄ, ք. Եգիպտոսում՝ Նեղոսի դելտայում: Միևնույն անունով նահանգի վարչ. կենտրոնը: Բն.՝ 183,6 հզ. (2001):

ՇԻԳԱ (Սիգա) Կիյոսի (1871–1957), ճապոնացի մանրէաբան: Մեծ ավանդ ունի *դիզենտերիայի* հետազոտման բնագավառում (հիվանդության հարուցիչը կոչվում է նրա անունով՝ շիգելներ): Աշխ–ները (Պ. *Էռլիխի* հետ) վերաբերում են վարակիչ հիվանդությունների քիմիաբուժությանը:

ՇԻԶՈԳՈՆԻԱ (< հուն. schizo – բաժանել, ճեղքել և ... *գոնիա*), նախակենդանիների (սպորավորներ, ֆորամինիֆերներ) և որոշ ջրիմուռների բազմակի անսեռ բազմացումը: Օրգանիզմը դառնում է բազմակորիզ և բաժանվում բազմաթիվ (կորիզների թվին համապատասխան) միակորիզ բջիջների՝ մերոզոիտների:

ՇԻԶՈՖՐԵՆԻԱ (< հուն. schizo – ճեղքել, խզել և phren – հոգի, բանականություն, միտք), հոգեկան հիվանդություն. հիմն. դրսևորումներն են՝ անձի յուրահատուկ փոփոխությունները (ակտիվության նվազում, ինքնամփոփություն ևն), ուղեկցվում է հոգեախտաբան. բազմատեսակ խանգարումներով (զառանցանք, զգայախաբություններ, գերհույզ. խանգարումներ ևն): Ընթացքը մեծ մասամբ քրոնիկական է (նոպաներով կամ անընդմեջ): Ավելի հաճախ առաջանում է երիտասարդ տարիքում:

ՇԻԼԱԿԱՋԵ Իվանե Իսիդորնի (1910–1978), վրացի լեզվաբան, հայագետ: Բանասիր. գիտ. դ–ր, պրոֆ. (1966): Հեղինակ է «Ժամանակակից հայոց լեզվի քերականություն» (1971), «Հին հայերենի քերականություն» (1975) և այլ աշխ–ների, նաև մենագրությունների:

ՇԻԼԴԵՐ Նիկոլայ Կառլովիչ (1842–1902), ռուս. ռազմ. ճարտարագետ, պատմաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1900): Նիկոլաևսկի ճարտարագիտ. ակադ–ի պետ (1886–99), Ս. Պետերբուրգի Հանր. գրադարանի տնօրեն (1899–1902): Գրել է Է. Ն. Տոտլեբենի (հ. 1–2, 1885–86), Պավել I–ի (1901), Նիկոլայ I–ի (հ. 1–2, 1903) և Ալեքսանդր I–ի (հ. 1–4, 1904–05) կենսագրությունները:

ՇԻԼԻՆ Աֆանասի Պետրովիչ (1924–1982), հրետանու ռուս գեն–լեյտ. (1975): ԽՄ հերոս (1944, 1945): ՀՄՊ–ի ժամանակ՝ դասակի հրամ. և հրետան. գումարտակի հետախուզության պետ:

ՇԻԼԻՆԳ, մետաղադրամ և դրամ. միավոր Մեծ Բրիտանիայում մինչև 1971–ը: Հավասար էր 12 պենսի կամ 1⁄20 ֆունտ ստեռլինգի:

ՇԻԼԻՆԳՈՎՍԿԻ Պավել Ալեքսանդրովիչ (1881–1942), ռուս. գրաֆիկ: Շ–ի օֆորտները, փայտափորագրություններն ու պատկերազարդումները («Բեսարաբիա», նկարաշար, օֆորտ, 1913, Կ. Մարքսի դիմանկարը, փայտագրություն, 1933) աչքի են ընկնում գծերի խստությամբ: 1925–ին Հայաստանում ստեղծել է «Բերդի պարիսպը: Երևան», «Սևանա վանքը», «Գեղարդի վանքը», «Հոիփսիմեի վանքը» մատիտանկարները (բոլորը՝ ՀԱՊ–ում):

ՇԻԼԻՈՆ (Chilion), XII–XV դդ–ի ամրոց Շվեյցարիայում՝ Ժնևի լճի ափին: Միջին դարերում՝ Սավոյան կոմսների (հետագայում՝ դուքսեր) նստավայր: Ամրոցի նկուղը ծառայել է որպես բանտ: Հանրահայտ է Ջ. Բայրոնի «Շիլոնի կալանավորը» դրաման:

ՇԻԼԼԵՐ (Schiller, դե Շիլդենֆելդ) Լեոն (1887–1954), լևի ռեժ., թատեր. գործիչ: 1917–ից ռեժ.՝ Վարշավայի թատրոններում: Շ. լեհ. բեմարվ–ում ձևավորել է մոնումենտալ թատրոնի սկզբունքները, գեղագիտ–յունը և ոճը, պայքարել նորարար., հերոս–բանաստեղծ. թատրոնի համար: ԼԺՀ Պետ. մրց. (1948):

ՇԻԼԼԵՐ Յոհան Քրիստոֆ Ֆրիդրիխ (1759–1805), գերմանացի բանաստեղծ, դրամատուրգ, արվ–ի տեսաբան: Ճանաչվել է «Ավազակներ» (1781) դրամայով, որտեղ պատկերել է թշնամանքը մարդկային փոխհարաբերություններում: Հեղինակ է նաև «Ֆիեսկոյի դավադրությունը Ջենովայում» (1783), «Սեր և խարդավանք» (1784), «Դոն Կառլոս» (1783–87, հայ.՝ 1878), «Մարիա Ստյուարտ» (1801, հայ.՝ 1894), «Օռլեանի կույսը» (1801), «Վիլհելմ Տել» (1804, հայ.՝ 1934) դրամաների, «Վալենշտայն» (1801, հայ.՝ 1977) եռերգության, նաև օդաների, բալլադների, «Ողբերգականը արվեստում» (1792), «Նամակներ մարդու գեղագիտական դաստիարակության մասին» (1795) և այլ աշխ–ների: Շ–ի ստեղծագործություններից հայ. են թարգմանել Ղ. Ալիշանը, Րաֆֆին, Հ. Թումանյանը, Գ. Բարխուդարյանը և ուր.: Նրա մի շարք պիեսներ բեմադրվել են հայ բեմում: Շ. ծանոթ է եղել հայ ժողդ–ի պատմությանը, նրա «Ոգետես» վեպի գլխ. հերոսի անունը Հայ է:

ՇԻԼԼԵՐ (Shiller) Ռոբերտ Ջեյմս (ծ. 1946), ամերիկացի տնտեսագետ: Յեյլի համալսարանի պրոֆ. (1982): Ամերիկ. տնտեսագիտ. ասոցիացիայի փոխնախագահ (2005), Արլ. տնտեսագիտ. ասոցիացիայի նախագահ (2006–07): Աշխ–ները վերաբերում են ֆինանսների տնտեսագիտ–յան տեսությանը: Քեյս–Շ–ի ցուցիչի ստեղծողներից է, աշխարհի 100 ազդեցիկ տնտեսագետներից:

Նոբելյան մրց. (2013, Յ. *Ֆամայի* և Պ. Լ. *Հանսենի* հետ):

ՇԻԼԼԻՆԳ (Schilling) Պավել Լվովիչ (1786–1837), գերմանացի գյուտարար և արևելագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1828): Հայտնագործել է (1812) էլ. ականը, ստեղծել (1832) գործնականում պիտանի առաջին էլեկտրամագնիս. հեռագրությունը, հավաքել է արլ. ժողդ–ների ձեռագրերի մեծաթիվ հավաքածու:

ՇԻԼԿԱ, գետ Անդրբայկալում: Միանալով Արգունին՝ կազմավորում է Ամուրը: Երկ.՝ 560 *կմ*, ավազանը՝ 206 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 550 *մ*^{3}/*վ*: Նավարկելի և լուղարկելի է:

ՇԻԼՈ Նիկոլայ Ալեքսեևիչ (1913–2008), ռուս. երկրաբան: ՌԳԱ ակադ. (1970): Սոց. աշխ. հերոս (1973): Աշխ–ները վերաբերում են Ռուսաստանի հս–արլ–ի երկրբ–յանն ու մետաղածնության (հիմնականում՝ ոսկու) հարցերին: ԽՄՀՄ Պետ. մրց. (1985):

ՇԻԼՈՆԳ (Ասամի լ–ներ), Հնդկաստանի հս–արլ–ում: Երկ.՝ 350 *կմ*, բարձր.՝ 1961 *մ*: Աշխարհի ամենախոնավ վայրերից (Չերափունջում տարեկան տեղումները 13 հզ. *մմ*–ից ավելին են, առլճն՝ 22,9 հզ. *մմ*) է: Ծածկված է արևադարձ. խոնավ անտառներով, թփուտներով:

ՇԻԼՈՎ Ալեքսանդր Եվգենևիչ (1930–2014), ռուս. ֆիզքիմիկոս: ՌԳԱ ակադ. (1990): Աշխ–ները վերաբերում են քիմ. ռեակ–

ցիաների մեխանիզմներին և կինետիկային, հոմոգեն և մետաղակոմպլեքս. կատալիզին:

ԽՍՀՄ (1982), ՌԴ (1998) Պետ. մրց-ներ:

ՇԻԼՈՎ, Իգնատի Ալեքսանդրովիչ (1921–2001), ռուս կենդանաբան-էկոլոգ: ՌԴԱ ակադ. (1994): Աշխ-ները վերաբերում են ընդհ., ֆիզիոլոգ. և պոպուլացիոն էկոլոգիային, ցամաք. ողնաշարավորների հարմարվողականության էվոլյուցիային:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1990):

ՇԻԼՈՎ, Նիկոլայ Ալեքսանդրովիչ (1872–1930), ռուս ֆիզքիմիկոս: Զուգորդված ռեակցիաների տեսության, գազերի կլանման (սորբման) ժամանակակից տեսության հիմնադիրներից է:

ՇԻԼՈՒԿ (ինքնանվանումը՝ չոլո), ժողդ Սուդանում: Ընդհ. թիվը՝ 1,5 մլն (2005): Լեզուն՝ շիլուկ: Պահպանում են ավանդ. հավատալիքները:

ՇԻԿԱԿԱԲՄԻԲ ԻՐԻԿՆԱՉՂՋԻԿ (Nictalus noctula), հարթաքիթ *չղջիկների* ընտանիքի կաթնասուն կենդանի: Խոշոր չղջիկ է. մարմնի երկ.՝ 64–81, պոչինը՝ 46–54, նախաբազկինը՝ 51–57 *մմ*: Ակտիվ է մթնշաղին: Մեծ կուտակումներ չեն առաջացնում: ՀՀ-ում հանդիպում է հաստաբուն, լայնատերև ծառերով առատ վայրերում:

ՇԻԿԱԿԱԲՄԻԲ ՏԱՌԵԶ (Ardea purpurea), *տառեղների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 78–90, թևերի բացվածքը՝ 120–150 *սմ*: Առավել գործունյա է արշալույսին և մթնշաղին: Տարածված է ձկնաբուծ. լճակներում: Օգտակար է. ոչնչացնում է կրծողներին:

ՇԻԿԱՀԵՐ Վարդ Թովմայի (ծ. 1926), գրող, մանկավարժ, սրտարան: Հեղինակ է «Լուսագ» (1989), «Չորս տող միայն» (1993), «Նոյն արեւուն տակ» (1996), «Բարի աստղի տակ» (1999), «Իմացումներ եւ ապրումներ» (2006), «Սպիտակ ամպեր» (2010) ժող-ների, «Կիսադարեայ պատմութիւն թրքահայ բժշկութեան» (1923–75), «Մեր կենսաբանական ցաւերը եւ Աննա Ասլանի նիւթ H–3» (1964) աշխ-ների, «Մխիթարեանի պարտէզէն» (1993) հուշագրության և այլ գործերի:

ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշան, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2016):

ՇԻԿԱՀՈՂԻ ԱՐԳԵԼՈՑ, ստեղծվել է 1958-ին՝ Կապանի անտառտնտ-յան հիմքի վրա (1961–79-ին՝ Բարթազի արգելավայր, տարածքը՝ 10 330 *հա*)՝ ՀՀ Սյունիքի մարզում՝ Խուստուփ լ-զանգվածի հվ-արլ. և Մեղրիի լ-շղթայի հս-արլ. լանջերին՝ ծ. մ. 700–2800 *մ* բարձր-ներում՝ Ծավ և Շիկահող գետերի վերին ավազաններում՝ կաղնու, բոխու, հաճարենու, սովոր. կենու, սոսու անտառների և կենդանիների պահպանության նպատակով:

ՇԻԿԱՆՅԱՆ Դմիտրի Ազարիայի (1901–1986), բալետի արտիստ, դիրիժոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1950): 1921–37-ից՝ Թբիլիսիի ՕՖԹ-ի մենապարող (ֆրանց՝ Լ. Դելիբի «Կոպելիա», Իվանուշկա՝ Չ. Պունիի «Սապատավոր ձիուկը»), 1936–41-ին՝ դիրիժոր, 1941–71-ին՝ ԵՕՖԹ դիրիժոր (Ա. Խաչատրյանի «Գայանե», «Խանդութ»՝ ըստ Ա. Սպենդիարյանի երաժշտության, Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճը» բալետները, ևն):

ՇԻԿԱՊՈՂ ՍՈՒՍԱՆ (Cercotrchas galaetotes), *կեռնեխների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 15, թևերի բացվածքը՝ 22–27 *սմ*, կ. զ.՝ 20–25 *գ*: Շարժվում է թռչկոտելով կամ քայլելով: Տարածված է անմշակ այգիներում, աղբանոցներում, գերեզմանոցներում:

ՇԻԿԱՊՈՂ ՔԱՐԱԹՈՒՉՆԱԿ (Oenanthe xantoprymna), *կեռնեխների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 14,5, թևերի բացվածքը՝ 26–27 *սմ*: ՀՀ-ում հանդիպում է Մեղրիի տարածաշրջանում: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՇԻԿԱՏԱԿ (Atropa), **մահամորմ**, մորմազգիների ընտանիքի բազմամյա թունավոր խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 4 տեսակ, ՀՀ-ում՝ 2 (մահամորմ և կովկաս. Շ.): Տարածված է Հվ. և Կենտր. Եվրոպայում, Փոքր Ասիայում, Կովկասում և այլուր: Մահամորմ տեսակը մշակվում է որպես ցավազրկիչ դեղաբույս, թունավոր է: Պարունակում է ***ատրոպին***, որը Հին Հռոմում կանայք օգտագործել են որպես «գեղեցկության միջոց»: Այստեղից՝ լատ. անվանումը՝ բելլադոնա (իտալ.՝ bella dona՝ «գեղեցկատես տիկին»):

ՇԻԿԱՅՄԱՆ ԼԱՄՊ, լույսի աղբյուր՝ դժվարահալ մետաղե (սովորաբար՝ վոլֆրամե) թելիկի կամ պարույրի ձևով պատրաստված ճառագայթիչով, որն էլ. հոսանքով շիկանում է մինչև 2500–3000 K: Շ. լ-ի լուսատվությունը 10–35 *լմ/Վտ* է, ծառայության ժամկետը՝ $5–10^3$ *ժ*: Շ. լ. 1872-ին ստեղծել է Ա. Ն. Լադոգինը, կատարելագործել՝ Թ. Ա. ***Էդիսոնը*** 1879–80-ին:

ՇԻԿՈՏԱՆ, ամենամեծ կղզին Մեծ Կուրիլյան լեռնապարում (ՌԴ Սախալինի մարզ): Տարածքը՝ 182 *կմ²*, բարձր.՝ 934 *մ*: Բնակավայրերը՝ Կրաբոզավոդսկոյե, Մալոկուրիլսկոյե: Զարգացած են ձկնորսությունը, ծով. կենդանիների արդյունահանումը:

ՇԻԿՈՒԼԱ (Šikula) Վինցենտ (1936–2001), սլովակ գրող: Հեղինակ է «Վարպետը» (1976), «Խորդենի» (1977), «Վիլմա» (1979) եռերգության, որտեղ ներկայացրել է Սլովակիայի շրջափակման և ազգ. ապստամբության ժամանակաշրջանի (1944) իրադարձությունները, նաև վիպակների, պատմվածքների:

ՇԻՀԵՅԻ, ք. Չինաստանի հս-արմ-ում՝ Սինցզյան-Ույղուր. ինքնավար շրջանում: Բն.՝ 607 հզ. (2010):

ՇԻՂԱՉՈՒԿ (Sander), *պերկեսակերպների* կարգի ձուկ: Երկ.՝ 60–70 *սմ* (մինչև 1,3 *մ*), զանգվածը՝ 2–4 (երբեմն՝ մինչև 20) *կգ*: Տարածված է Բալթիկ, Սև, Կասպից և Արալյան ծովերի ավազանների քաղցրահամ և աղիավուն ջրերում: Արդյունագործ. և բազմացման արժեքավոր ձուկ է:

ՇԻՄԻԿ ԱՐՅԱՆ, արյան հեղուկ մասը՝ առանց ձևավոր տարրերի և ֆիբրինի (էրիթրոցիտներ, լեյկոցիտներ, թրոմբոցիտներ): Առաջանում է օրգանիզմից դուրս՝ արյան մակարդման ընթացքում: Արյան շիճուկի սպիտակուցների (ալբումիններ և գլոբուլիններ) քանակի հարաբերությունն ունի ախտորոշիչ նշանակություն:

ՇԻՃՈՒԿԱԱԽՏՈՐՈՇՈՒՄ, սերոդիագնոստիկա (< լատ. serum – շիճուկ), վարակիչ հիվանդությունների ախտորոշումը շճաբան. ռեակցիաների օգնությամբ հնարավորություն է տալիս հիվանդի արյան շիճուկում հայտնաբերել՝ առանձնահատուկ հակամարմինը որոշակի հակածինի հանդեպ (օր.՝ Վասերմանի ռեակցիան՝ սիֆիլիսի, Վիդալի ռեակցիան՝ որովայն. տիֆի դեպքերում):

ՇԻՃՈՒԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, սերոլոգիա (< լատ. serum – շիճուկ և ...*լոգիա*), *իմունաբանության* բաժին. ուսումնասիրում է հակածինի (մանրէ, վիրուս, օտարածին սպիտակուց) ռեակցիան հակամարմինների հետ՝ օրգանիզմից դուրս:

ՇԻՃՈՒԿԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, սերոթերապիա (< լատ. serum – շիճուկ և *թերապիա*), մարդու և կենդանիների հիվանդությունների (օր.՝ դիֆթերիա, խոզերի կարմիր քամի) բուժումը շիճուկներով և գամմա-գլոբուլիններով:

ՇԻՃՈՒԿԱԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ, սերոպրոֆիլակտիկա (< լատ. serum – շիճուկ և *կանխարգելում*), մարդկանց և կենդանիների իմունացումը շիճուկների, գամմա-գլոբուլինների օգնությամբ՝ պասսիվ իմունիտետ ստեղծելու համար:

ՇԻՃՈՒԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, ալերգիայի դրսևորում (հոդացավեր, տենդ, ցան, քոր) օտարածին շիճուկն օրգանիզմ ներմուծելիս: Պայմանավորված է շիճուկի սպիտակուցի հանդեպ օրգանիզմի զգայունության բարձրացմամբ:

ՇԻՃՈՒԿՆԵՐ իմունային, *հակածիններով* իմունացված մարդու և կենդանիների արյունից ստացված պատրաստուկներ, որոնք պարունակում են ***հակամարմիններ***՝ բակտեր. տոքսինների, ախտածին մանրէների և վիրուսների դեմ: Տարբերում են բուժականխարգելիչ և ախտորոշիչ իմուն. Շ.: Ստացվել են նաև Շ-ին փոխարինող համապատասխան գամմա-գլոբուլիններ, որոնք ավելի արդյունավետ են: Կենդանիների արյունից ստացած Շ. մարդկանց ներարկելիս կարող են զարգանալ *շիճուկային հիվանդություն* և *անաֆիլաքսիա*:

ՇԻՄԱՅԻ Գերգեյ (Շիմայան կամ Սիմայան Գրիգոր Յանուշի, 1823–1907), հունգարացի գրող, թարգմանիչ, պետ. գործիչ: 1848–49-ի հունգ. հեղ-յան մասնակից. եղել է Տրանսիլվանիայի ազգությունների հարցերով կոմիսար: Հեղինակ է «Նոր Հայաստան», «Արվեստի հիշատակին» (1895) և այլ բանաստեղծությունների, նաև հոդվածների: Թարգմանել և «Արմենիա» (հունգ.) հանդեսում տպագրել է Սայաթ-Նովայի, Ղ. Ալիշանի, Պ. Դուրյանի, Ռ. Պատկանյանի, Մ. Պեշիկթաշլյանի, Մ. Չերազի և ուր. գործերից:

ՇԻՄԱՆՈՎՍԿԻ (Szymanowski) Կարոլ (1882–1937), լեհ կոմպոզիտոր, դաշնակահար: Հեղինակ է «Հարյուր զվարճալի իրադարձություններ» (1967), «Մարդիկ կամրջին» (1986), «Վերջ և սկիզբ» (1993), «Այստեղ» (2009) և այլ քնար. բանաստեղծությունների ժող-ների: Նորելյան մրց. (1996):

ՇԻՄՈՆՈՎԻՉ (Szymonowicz) Շիմոն (1558–1629), լեհ բանաստեղծ: Գրել է նաև լատ.: Զամոյսկի ակադ-ի հիմնադիրներից (1954): Հեղինակ է «Հովվերգություն» (1614) ժող-ի, «Գեղջկուհիներ» (1614) շարքի, «Զոզեֆ Գաստուս» (1587) ողբերգության, «Պենտելեսիա» (1618, հայ.՝ 1778) քնարադրամատիկ. գործի:

ՇԻՄՊԱՆԶԵ (Pan), մարդանման կապիկների սեռ: Մարմնի երկ.՝ մինչև 95 *սմ*: Սովոր.

և թզուկ Շ–ները հանդիպում են Աֆրիկայի արևադարձ. անտառներում: Ցամաքաբնակ– ծառաբնակ է: Կազմում են մինչև 20 անհատից բաղկացած խմբեր: Ի տարբերություն մյուս մարդանման կապիկների՝ գենետիկ. և կենսաքիմ. ցուցանիշներով մոտ է մարդուն: Օգտագործվում է բժշկակենսբ. փորձարարության մեջ: Կյանքի տևողությունը 40 տարի է: Թվաքանակը կրճատվում է, 2 տեսակ գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՇԻՅԱՆՈՎ Գեորգի Միխայլովիչ (1910–1995), ռուս փորձարկող օդաչու: ԽՄ հերոս (1957): Փորձարկել է տարբեր ինքնաթիռներ, այդ թվում՝ առաջին հրթիռ. կործանիչները, ՄիԳ–19–ի վերթիռը կատապուլտից ևն:

ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐ, բնական և արհեստ. նյութերի համախումբ, որոնք օգտագործվում են շին–յան և վերանորոգման աշխ–ներում: Լինում են բնական քարային, հանք. (ցեմենտ, կիր, գիպս ևն) և օրգ. (բիտում, ձյութ, ասֆալտբետոն ևն), կապակցանյութեր, մետաղ. և փայտե: Շ–ներ են նաև ձայնա– ու ջերմամեկուսիչ և հարդարման (լինոլեում, պաստառ ևն) նյութերը: ՀՀ–ում ավանդաբար զարգացած է բնական շինանյութերի արդ–յունը. գործում են բազմաթիվ հանքեր, ցեմենտի գործարաններ, գաջի արտադր–յուն, ներկերի, սոսինձների և այլ արտադրամասեր:

ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, արդ–յան ճյուղ, որն զբաղվում է *շինանյութերի* և ապակու, կապակցանյութերի, հավաքովի երկաթբետոնե կառուցվածքների, ասբոցեմենտի, խեցե, հախճապակե, ճենապակե և այլ իրերի արտադր–յամբ: ՀՀ–ում հատկապես զարգացած է բնական շինանյութերի (քարեր, երեսպատման սալիկներ) տարատեսակ լցանյութերի (պեոլիտ, պեմզա, հրաբխ. խարամ, խիճ, ավազ ևն) արտադր–յունը: Կապակցանյութերից արտադրվում է ցեմենտ, գաջ, կիր. գործում են «Հրազդանցեմենտ» (2016–ից, 2001–16–ին՝ «Միկա–ցեմենտ», հիմն.՝ Հրազդանի ցեմենտի գործարանի հիմքի վրա, 1970), «Արարատցեմենտ» (2003–ից՝ «Մուլտիգրուպ» կոնցեռնի կազմում, հիմն.՝ Արարատի ցեմենտի–շիֆերի կոմբինատի հիմքի վրա, 1957):

Ներկերի, ծածկանյութերի և քիմ. նյութերի արտադր–յան ոլորտում առաջատար է «Բրիտանիան Քաթինզզ ընդ Քիմիքզ» ընկ–ը (ներկեր, լաքեր, մածիկներ, սոսինձներ, բետոնի պլաստիկապարարներ ևն):

ՇԻՆԱՍԻ (Şinasi) Իբրահիմ (1826–1871), թուրք գրող: Թուրք. առաջին աշխարհիկ «Թաշվիրի էֆքիյար» թերթի հրտ.: Հեղինակ է «Բանաստեղծի ամուսնությունը» (1860) կատակերգության, նաև քնար. բանաստեղծությունների:

«ՇԻՆԱՐԱՐ», հաս–քաղ. պարբերաթերթ (1927–31, Նյու Յորք): ՀՕԿ–ի Ամերիկայի շրջանի կենտր. վարչության հրտ–յուն:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԶԱՅՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, *ձայնագիտության* բաժին. ուսումնասիրում է շենքերի և բնակավայրերի ձայնամեկուսացման և շենքերի (կառույցների) աղմուկից պաշտպանման հարցերը շին. (կառուցվածք.) և ճարտ. միջոցներով:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԿԱ, գիտ–յուն կառույցների ամրության, կոշտության, կայունության և տատանումների սկզբունքների ու մեթոդների հաշվարկման մասին: Շ. մ–ի դիտարկման հիմն. օբյեկտներն են հարթ և տարած. ձողային համակարգերը և սալերից ու թաղանթներից կազմված համակարգերը: Շ. մ–ում մշակվող հաշվարկի տեսությունը հիմնված է տես. մեխանիկայի, նյութերի դիմադրության, առաձգականության, պլաստիկության և սողքի տեսությունների մեթոդների վրա:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ, հող. աշխ–ների (էքսկավատորներ, կեռաշերեփներ, բուլդոզերներ), ցցեր խփելու (ցցահար մեքենաներ, թակեր), շինանյութեր մշակելու (քարջարդիչներ, քարմաղեր, քարաղացներ), բետոն. (բետոնախառնիչներ, բետոնապոմպեր), ամրան. և սանտեխ. աշխ–ներ (ճկող, կտրող հաստոցներ) կատարելու, հարդարման և վերջնամշակման համար:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՂԱԽՆԵՐ, կապակցանյութերի, մանրացված լցանյութերի և ջրի խառնուրդներ: Ըստ նշանակման՝ լինում են **շարվածաքային** (կիրառվում են քարաշեն կառուցվածքներում), **վերջնամշակման** (սվաղման աշխ–ներում) և **հատուկ** (ջրամեկուսիչ, ձայնամեկուսիչ ևն): Ըստ կապակցանյութերի տեսակների՝ տարբերում են **անօրգանական** (ցեմենտ., գիպս. և խառը շաղախներ) և **օրգանական** (պոլիմեր., ասֆալտ. շաղախներ) կապակցանյութերով Շ. շ.:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՋԵՐՄԱՏԵԽՆԻԿԱ, *շինարարական ֆիզիկայի* բաժին. ուսումնասիրում է շենքերում, կառույցներում և նրանց մասնաբաժիններում ջերմահաղորդականության, խոնավության փոխանցման, օդի ներթափանցման երևույթները և մշակում ճարտարագիտ. հաշվարկման մեթոդներ՝ շենքերում ջերմախոնավ. և սանհիգիենիկ անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՖԻԶԻԿԱ, գիտ. առարկաների համախումբ. ընդգրկում է շենքերի ու շինությունների կառուցման ու շահագործման հետ կապված ֆիզ. երևույթների ու շարժընթացների ուսումնասիրությունը: Շ. ֆ–ի հիմն. բաժիններն են շին. ջերմատեխնիկան, շին. ձայնագիտ–յունը, շին. լուսատեխնիկան ևն:

ՇԻՆԳՈՒ (Xingú), գետ Բրազիլիայում, Ամազոնի աջ վտակը: Երկ.՝ 1890 *կմ*, ավազանը՝ 513 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ մոտ 16 հզ. *մ*^{3}/*վ*: Ակունքից մինչև սահանքները (190 *կմ*) նավարկելի է:

ՇԻՆԿԱՐՈՒԿ Վլադիմիր Իլարիոնովիչ (1928–2001), ուկրաինացի փիլ.: Ուկրաինայի ԳԱ ակադ. (1978), ՌԳԱ թղթ. անդամ (1981): 1968–2001–ին՝ Ուկրաինայի ԳԱ փիլ–յան ինստ–ի տնօրեն: 1969–71, 1979–2001–ին՝ «Փիլիսոփայական միտք» (ուկր.) ամսագրի գլխ. խմբ.: Աշխ–ները վերաբերում են դիալեկտիկ. մատերիալիզմին:

ՇԻՆԿՈՒԲԱ Բագրատ Վասիլիի (1917–2004), արխազ բանաստեղծ, պետ. գործիչ: Արխազ. ԽՍՀ ժող. բանաստեղծ (1967): Սոց. աշխ. հերոս (1987): 1958–78–ին՝ Արխազ. ԽՍՀ ԳԽ նախագահության նախագահ: Հեղինակ է «Իմ համերկրացիները» (1950), «Երգ ժայռի մասին» (1965) չափածո վեպերի, «Հեռացածներից վերջինը» (1974, հայ.՝ 1978) պատմավեպի: Կազմել է նաև արխազ. ժող. պոեզիայի ժող. (1959):

ՇԻՆՇԻԼԱՆԵՐ (Chinchilla lanigera), կրծողների կարգի կաթնասունների սեռ: Մարմնի երկ.՝ մինչև 38, պոչինը՝ մինչև 15 *սմ*: Հայտնի է 2 տեսակ՝ բարձրլեռն. Անդերում (Հվ. Ամերիկա): Մորթին մոխրաերկնագույն է, շատ փափուկ, խիտ և ամուր: XX դ–ի սկզբին գրեթե ոչնչացվել են (մորթու համար): 1 տեսակ գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՇԻՆՈՒՀԱՅՐԻ ԿԻՒՍԱՆԱՅ ԱՆԱՊԱՏ, XVII դ–ի ճարտ. համալիր ՀՀ Սյունիքի մարզի Շինուհայր գ–ի հին գյուղատեղիում: Կառուցել է ազուլիսցի մահտեսի Ազարիան 1676–ին (ճարտ.՝ Ուստա Մուրադ): Անապատի Սբ Աստվածածին եկեղեցին 1 զույգ խաչաձև մույթերով, խորանի 2 կողմում ուղղանկյուն ավանդատներով եռանավ բազիլիկ է: Հվ–ում կանգուն սեղանատունը կառուցվել է 1720–ին: XVII դ–ի վերջից դարձել է գրչության կենտրն, սակայն XVIII դ–ում բոլոր շինությունները կիսավեր էին:

ՇԻՇԿԻՆ Իվան Իվանովիչ (1832–1898), ռուս գեղանկարիչ, գրաֆիկ, ռեալիստ. բնանկարի վարպետ: Պերեդվիժնիկ: Էպիկ. պատկերներում («Կաղնու պուրակ», 1887, «Առավոտը սոճիների անտառում», 1889, ևն) բացահայտել է Ռուսաստանի բնության գեղեցկությունը, հզորությունն ու հարստությունը: Հեղինակ է նաև վիմագրությունների և օֆորտների: Շ–ի գործերից 5–ը («Աշուն», 1892, ևն) ՀԱՊ–ում են:

ՇԻՇԿՈՎ Ալեքսանդր Սեմյոնովիչ (1754–1841), ռուս պետ. գործիչ, գրող, ծովակալ (1824): ՌԳԱ (1796), Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. (1800, 1813–ից՝ նախագահ) անդամ: Ժող. լուսավորության նախարար և օստար դավանությունների հոգևոր գործերի գլխ. կառավարիչ (1824–28): Հրապարակել է «չուգունե» գրաքննության օրենքը (1826):

ՇԻՇԿՈՎ Վյաչեսլավ Յակովլևիչ (1873–1945), ռուս գրող: Հեղինակ է «Բազմություն» (1923), «Ուգրյում գետը» (հ. 1–2, 1933) վեպերի, «Եմելյան Պուգաչով» (գիրք 1–3, 1938–45) պատմ. դյուցազներգության, նաև վիպակների, պատմվածքների:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, հետմահու):

ՇԻՇՄԱՆՅԱՆ Ռաֆայել Մարտիրոսի (1885–1959), նկարիչ, արվեստաբան: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1956): Հեղինակ է բնանկարների («Գյուղական փողոց», 1911, «Շուկա: Կոնկառնո», 1921, «Ավինյոնի հին կամուրջը», 1937, «Գորիս», 1954, ևն), դիմանկարների («Ինքնանկար», 1948, ևն), նատյուրմորտների, որմնանկարների, գրքի գրաֆիկ. գործերի, նաև «Էդգար Շահին» (1956), «Բնանկարը և հայ նկարիչները» (1958) գրքերի:

ՇԻՇՄԱՆՅԱՆ Ռուբեն, **Դերսիմի Քեռի** (1865/66–1903), ազգ–ազատագր. շարժման գործիչ, ֆիդայի: Առաջադրել է հայ–քրդ. համագործակցության ծրագիր: 1900–ին ձերբակալվել է, 1903–ին կախաղան բարձրացվել:

ՇԻՇՄԱՆՈՎ Իվան (1862–1928), բուլղար մշակույթի գործիչ: 1903–07–ին՝ ժող. լուսավորության նախարար, կրթության ջատագով: Հեղինակ է համաշխ. և բուլղ. մշակույթի, գրկ–յան, ազգագրության, բանահյուսության, պատմության, հոգեբ–յան վերաբերյալ աշխ–ների:

ՇԻՇՄԱՐՅՈՎ Վլադիմիր Ֆեոդորովիչ (1875–1957), ռուս. բանասեր: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1946): Ռուսաստանում ռոմանագիտ–յան դպրոցի հիմնադիրներից: Հետազոտել է ֆրանս. դպրոցի պատմությունը (ավելի ուշ՝ միջնադար. և Վերածննդի շրջանների), հինֆրանս. էպոսը:

Լենինյան մրց. (1957):

ՇԻՊ (Acipenser nudiventris), թառափների սեռի գաղթող ձուկ: Երկ՝ մինչև 2 *մ*, կ. զ՝ մինչև 30 *կգ* (երբեմն՝ ավելի): Հանդիպում է Արալյան, Կասպից, հազվադեպ՝ Սև և Ազովի ծովերում, ձուղպադրում է գետերում: Արդյունագործ. և կլիմայավարժեցման արժեքավոր ձուկ է:

ՇԻՊԿԱ, Շիպկայի լեռնանցք, Բուլղարիայում՝ Ստարա Պլանինա լ–ներում: Բարձր.՝ 1185 *մ*: 1877–78–ի ռուս–թուրք. պատերազմի ժամանակ ռուս–բուլղ. ՋՈՒ (հրամ–ներ՝ գեն. Ֆ. Ֆ. Ռադեպկի, Ն. Գ. Ստոլետով) լ–անցքում 1877–ին դիմագրավել են թուրք. զորքերի (հրամ.՝ Սուլեյման փաշա) համառ հարձակումներին, ապա 5 ամիս պահպանել են լ–անցքը՝ մինչև ռուս. զորքերի հարձակումը: Շ–ում զոհված ռուս և բուլղար զինվորների հիշատակին կառուցվել է հուշարձան–թանգարան:

ՇԻՊՈՒՆՈՎ Արկադի Գեորգիևիչ (1927–2013), մեխանիկայի և կառավարման շարժընթացների բնագավառի ռուս գիտնական: ՌԳԱ ակադ. (1991): Սոց. աշխ. հերոս (1979): Աշխ–ները վերաբերում են մեքենաների ամրությանը և դինամիկային, ինքնաշխատ կառավարման տեսությանը, մեքենաների նախագծման և կառուցման տեսությանը:

ԽՍՀՄ (1968, 1975, 1987), ՌԴ (1998, 1999) Պետ., Լենինյան (1982) մրց–ներ:

ՇԻՍՏՈՍՈՄԱԶՆԵՐ, շիստոսոմատոզներ, մարդու և կենդանիների քրոնիկ. ինվազիոն հիվանդություն՝ տարածված արևադարձ. շրջաններում: Հարուցիչները շիստոսոմներն են: Ախտանշանները՝ մաշկի ցանավորում, քոր, միզարձակման ժամանակ սուր, ծակող ցավեր: Վարակվում են ջրի միջոցով:

ՇԻՎԱ (սանսկրիտ – «օրհնող», «բարեգութ»), բրահմայականության և հինդուիզմի 3 գերագույն աստվածներից (*Բրահմայի* և *Վիշնուի* հետ), նախաբրիական Աստված, «կենդանիների տիրակալ»: Պատկերվում է սարսափազդու կերպարանքով, հաճախ՝ սրբազան պարի ժամանակ՝ մարմնավորելով տիեզ. էներգիան, կամ էլ որպես ճգնավոր, ինչպես նաև լինգայի խորհրդանշ. կերպարով (ֆալոսային պատկեր):

ՇԻՎԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, *հինդուիզմի* գլխ. ուղղություններից (վիշնուականության հետ), մի շարք պաշտամունքների պայման. անվանումը (լինգայաթներ, շակտիստներ, պաշուպատներ ևն), որոնց միավորում է *Շիվայի* ու նրա հետ կապված աստված., առասպել–դից. կերպարների պաշտամունքը: Հիմնականում տարածված է Հվ. և Արլ. Հնդկաստանում:

ՇԻՎԻՆԻ, արեգակի ու արդարության աստվածը ուրարտ. դից–յան մեջ: Դիցակարգի գերագույն եռյակում (*Խալդիի* և *Թեյշեբայի* հետ): Պատկերվել է գնդին ծնկած և ձեռքերը վեր պարզած տղամարդու տեսքով՝ թևավոր արևի սկավառակը (իր խորհրդանշանը) գլխավերևում: Ուրարտ. ամիսներից մեկը կոչվել է Շ–ի անունով:

ՇԻՐԱԶ Արա (Կարապետյան Արամազդ) Հովհաննեսի (1941–2014), քանդ.: Հովհաննես *Շիրազի* և Սիլվա *Կապուտիկյանի* որդին: ՀՀ ժող. նկարիչ (2009): Հեղինակ է դիմաքանդակների («Վիլյամ Սարոյան», 1975, «Հրաչյա Ներսիսյան», 1976), հուշարձանների [Պ. Սևակի (1974, Երևան), Ա. Մյասնիկյանի (1981, Երևան), Մ. Մկրտչյանի (2004, Գյումրի), Հ. Շիրազի (2005, Երևան)], «Վազգեն Ա» (2008, Վազգենյան հոգևոր դպրանոցի բակում) արձանի, «Դվին» հյուրանոցի ճակատի «Դվին» հարթաքանդակի (1978), Վ. Սարոյանի (1989), Հ. Շիրազի (1994), Ս. Փարաջանովի (1999, երեքն էլ՝ Կոմիտասի անվ. զբոսայգու պանթեոն) մահարձանների: ՀԽՍՀ Պետ. մրց. (1979):

ՇԻՐԱԶ Հովհաննես (Կարապետյան Օնիկ Թադևոսի, 1914–1984), բանաստեղծ: Արա *Շիրազի* հայրը: Հեղինակ է «Գարնանամուտ» (1935), «Երգ Հայաստանի» (1940), «Լիրիկա» (1946), «Քնար Հայաստանի» (հ. 1–3, 1958–74), «Համամարդկային» (1975) և այլ բանաստեղծությունների ու պոեմների ժող–ների, «Խաղաղություն ամենեցուն» (1982), «Անի» (հրտ.՝ 2011) պոեմների և այլ երկերի: Շ–ի լավագույն գործերից են «Բիբլիական» (1942, հրտ.՝ 1971) խոհափիլ. պոեմը, որի քնար. հերոսը կատարելության ձգտող, մեղքերից մաքրվել փորձող մարդն է, մորը նվիրված «Հուշարձան մայրիկիս» (1968) ժող–ը, որտեղ վերաիմաստավորել է մայրական թեման, Մեծ եղեռնի մասին «Հայոց դառնաթեականը» (1965) պոեմը, հայրենասիր. և սիրային քնարերգությունը («Սիամանթո և Խջեզարե», 1935, «Հայոց հրաշքը, Մաշտոց»), առակները («Ծձու ու մեղուն», 1953, «Առակս զինչ ցուցանէ…», 1978), հայրենապատումի քառյակները («Քառեակներ», 1973, «Յոթնապատում», 1977): Կատարել է նաև թարգմ–յուններ: ՀԽՍՀ Պետ. (1975), ՀԳՄ Հ. Թումանյանի անվ. (1982) մրց–ներ:

ՇԻՐԱԶ, ք. Իրանի հվ–ում: Ֆարս օստանի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,461 (2011): Զարգացած է նավթավերամշակությունը, վարդի յուղի արտադր–յունը, գորգագործությունը: Ունի համալսարան: Հիմնադրել են արաբ–ները VIII դ–ում: XVIII դ–ի 2–րդ կեսին եղել է Իրանի մայրաքաղաքը: Շ–ում են ծնվել բանաստեղծներ Ասադին և Հաֆեզը:

ՇԻՐԱԶԻ (աշ–Շիրազի) Կուտ–ատ–դին (1236–1311), պարսիկ մաթեմատիկոս: Պարսկ. է շարադրել Էվկլիդեսի «Սկզբունքները», Պտղոմեոսի «Ալմագեստը», Իբն ալ–Հայսամի աշխ–ները:

ՇԻՐԱԶԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ, գործել է XIV–XVI դդ–ում Շիրազում (Հվ. Իրան): Վաղ շրջանի ոճին բնորոշ են արխաիկությունը և մոնումենտալությունը, ուշ շրջանի կոմպոզիցիաներին՝ գունաերանգի նրբությունն ու զսպվածությունը:

ՇԻՐԱԿ (Chirac) Ժակ Ռենե (ծ. 1932), Ֆրանսիայի նախագահ՝ 1995–2007–ին: 1974–76–ին և 1986–88–ին՝ Ֆրանսիայի վարչապետ, 1977–95–ին՝ Փարիզի քաղաքապետ, 1995–2007–ին՝ Անդորրայի իշխան: 2002–ից՝ «Շարժում հանուն ազգային միության» կուս–յան առաջնորդներից:

ՇԻՐԱԿ, գվո *Այրարատ* նհնգ–ում՝ Ախուրյան գետի ավազանում: Տեղանունը կապվում է Հայկի ծոռ *Շարայի* անվան հետ: Մինչև IV դ. եղել է արքունի տիրույթ. դարասկզբին Տրդատ Գ պարգևել է *Կամսարականներին*: Վերջիններս 783–ին Շ. *Արշարունիքի* հետ վաճառել են Բագրատունիներին: 961–ին գվո–ը դարձել է արքունի ոստան՝ *Անի* մայրաքաղաքով: 1555 և 1639–ին գվո–ն Ախուրյան գետով բաժանվել է Սեֆյան Պարսկաստանի (արլ. մաս) և Օսմ. կայսրության (արմ. մաս) միջև: 1805–ին Ռուս. կայսրությանն է միացվել Արլ. Շ., 1878–ին՝ Արմ. Շ.: 1918–20–ին գվո–ը ՀՀ–ի տարածքում էր (1920–ի մայիսից՝ Շիրակի նհնգ): 1921–ի *Մոսկվայի պայմանագրով* գվո–ի արմ. մասը տրվել է Թուրքիային: Արլ. մասը ՀԽՍՀ–ի մեջ կազմել է Ալեքսանդրապոլի գվո–ը, 1995–ից ՀՀ *Շիրակի մարզի* կազմում է:

«ՇԻՐԱԿ», գր., հաս., հանդես (1905–06, Ալեքսանդրիա, 1906–07, Կահիրե, 1909, Կ. Պոլիս): Խմբ–ներ՝ Միքայել Կյուրճյան, Վահան Թեքեյան, Արփիար Արփիարյան:

«ՇԻՐԱԿ», քաղ., հաս., գր. պարբերաթերթ (1933–36, Բուենոս Այրես): «Շիրակ» բարեգործ. միության վարչության հրտ–յուն: Խմբ.՝ Աբրահամ Գրաճյան:

«ՇԻՐԱԿ», գր., մշակութ., հաս. երկշաբաթաթերթ (1939–90, Ախուրյան, 1998–ից՝ Գյումրի, 1939–59–ին՝ «Կոլտնտեսական»): Տնօրեն–խմբ.՝ Սամվել Մարգարյան (1998–ից):

«ՇԻՐԱԿ», տպարան–հրտչ–յուն, գրատուն Բեյրութում, ստեղծվել է 1946–ին: Հիմնադիր–տնօրեն՝ Կարապետ Հանեսյան, 1994–ից՝ Վիգեն Հանեսյան:

«ՇԻՐԱԿ», գրկ–յան և արվ–ի ամսագիր (1956–97, Բեյրութ): ԹՄՄ հրտ–յուն: Խմբ–ներ՝ Զարեհ Մելքոնյան, Օննիկ Սարգիսյան, Վաչե Ղազարյան, Հայկ Նազգաշյան, Ժիրայր Դանիելյան:

ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՋՐԱՆՑՔ, *Նալբանդի ջրանցք*, ՀՀ Լոռու մարզում: Սկիզբ է առնում Չիչկան գետի վերին հոսանքից, անցնում Շիրակամուտ, ապա Հարթագյուղով հասնում մինչև Մեծ Պարնի գ.: Շահագործման է հանձնվել 1940–ին: Երկ.՝ 36 *կմ*, ջրթողունակությունը՝ 2 $մ^3/վ$: 1988–ի Սպիտակի երկրաշարժի ժամանակ ավերվել է, վերակառուցվել է 1998–ին:

ՇԻՐԱԿԱՎԱՆ, հնավայր ՀՀ Շիրակի մարզում՝ Ախուրյան գետի ձախ ափին՝ ապաբնակեցված Շիրակավան գ–ի մոտակայքում: Ախուրյանի ջրամբարի կառուցումից (1976) հետո ծածկվել է ջրով: Բնակատեղիներից մեկում (մ. թ. ա. XII–VIII դդ.) բացվել են շենքերի, սրբարանի ավերակներ, դամբարաններ, մյուսում (մ. թ. ա. II–մ. թ. III դդ., զբաղեցրել է 5 *հա*–ից ավելի տարածք)՝ կանոնավոր նախագծով կառուցապատված թաղամասերի ավերակներ, մետաղագործ. և այլ արհեստանոցների հետքեր:

ՇԻՐԱԿԱՎԱՆ, Երազգավորս, ք. Այրարատ նհնգ–ի *Շիրակ* գվո–ում՝ Անի ք–ից հս–արլ.՝ Ախուրյանի աջ ափին (այժմ՝ Թուրքիայի Բաշ Շորագյալ գ–ի տեղում): IX դ–ի վերջերից եղել է Բագրատունյաց թագավորության մայրաքաղաքը (մոտ 40 տարի): Ըստ պատմիչ Վարդան Արևելցու՝ *Սմբատ Ա.* քաղաքում կառուցել է Սբ Քրկիչ եկեղեցին և այնտեղ օծվել: Ենթադրվում է, որ ավերվել է սելջուկ. թուրքերի 1064–ի արշավանքի ժամանակ: XII դ–ում վերականգնվել է: Հետագայում՝ գյուղ:

ՇԻՐԱԿԱՎԱՆԻ ՍՈՒՐԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻ, ճարտ. հուշարձան Անիից հս–արլ.՝ Ախուրյան գետի ափին: Կառուցել է Սմբատ Ա Բագրատունին (890–914): 2 զույգ որմնամույթերով գմբեթավոր դահլիճ է: XIX դ–ի սկզբին գմբեթը ռուս–թուրք. պատերազմի ժամանակ ավերվել է, 1950–ական թթ–ին՝ պայթեցվել:

ՇԻՐԱԿԻ ԱՐՏԵՋՅԱՆ ԱՎԱՋԱՆ, *Շիրակի դաշտում*՝ Ախուրյան գետի միջին ավազանում: Տարածքը՝ ավելի քան 300 $կմ^2$ ծածկված տուֆ. լավաներով, լճագետ. ու ավազակավ. նստվածքներով: Կան քաղցրահամ և հանք. ջրերի տեղամասեր: Ջրապարունակ հորիզոնները կարևոր նշանակություն ունեն Գյումրիի ջրամատակարարման համար: Հանք. ջրերն Ախուրյան գ–ից հս–արմ. և Ախուրիկ ու

Իսահակյան գ–երի միջև գտնվող տարածքում են. հարուստ են ծծմբաջրածնային ու ածխաջրածնային գազերով, բարձր ճնշումային են, հանքայնացումը՝ 1,2–4,8 *գ/լ*, ջերմաստիճանը՝ 12–21°C:

ՇԻՐԱԿԻ ԴԱՇՏ, Շիրակի սարահարթ, ՀՀ հս–արմ–ում (Կարսի սարահարթի արլ. շարունակությունը)՝ Ախուրյանի միջին հոսանքի ձախափնյա ավազանում: Տարածքը՝ մոտ 60 *կմ*², բարձր.՝ 1400–1800 *մ*: Ծածկված է լճագետ. նստվածքներով, զգալի տարածություններ՝ տուֆ. լավաներով: Հայտնի է *Շարայի* փորի ու Շ. դ–ի մասին ավանդույթը: Աշակում են նաև կերաբույսեր, բանջար. և այլ բույսեր: Տարածքում են *Շիրակի ջրանցքը, Ախուրյանի ջրամբարը, Կառնուտի ջրամբարը*:

ՇԻՐԱԿԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, ՀՀ հս–արմ–ում: Զգվում է լայնակի ուղղությամբ՝ Ախուրյանի հովտից մինչև Չիչկանի ստորին հոսանքը: Երկ.՝ 36 *կմ*, միջին բարձր.՝ 2300 *մ*, առլզ՝ 2556 *մ* (Եզնասար լ.): Լանդշաֆտը՝ լ–տափաստանային:

ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ ՀՀ ԳԱԱ, հիմնադրվել է 1997–ին Գյումրիում: Մինչև 2002–ը եղել է ՀՀ ԳԱԱ ինագիտ–յան ու ազգագրության ինստ–ի մասնաճյուղ, 2003–ից՝ ինքնուրույն: Նպատակը Շիրակի տարածաշրջանի նյութ. ու հոգևոր մշակույթի, էթնոհոգեբ. և սոցիոլոգ. խնդիրների ուսումնասիրություն է: Հիմնադիր տնօրենն՝ Սերգո Հայրապետյան:

ՇԻՐԱԿԻ ՃԿՎԱԾՔ, երկրակեղևի իջած կամ ճկված միջլեռն. տեղամաս ՀՀ հս–արմ–ում: Լցված է վերին պրոտերոզոյ–ստորին պալեոզոյի խիստ ծալքավորված փոխակերպային թերթաքարերով, կավճի նստվածք. և հրաբխանստվածք. գոյացումներով, պալեոգենի հրաբխածին և նեոգենի նստվածքահրաբխածին առաջացումներով: Բնորոշ է ռելիեֆի 3 տիպ՝ Շիրակի կուտակումային հարթավայրը, Ախուրյանի գետահովիտը և շրջակա լեռնապարը:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, վտմ ՀՀ–ում: Կազմավորվել է 1995–ին՝ Ախուրյանի, Ամասիայի, Արթիկի, Անիի, Աշոցքի նախկին վարչ. շրջանների հիմքի վրա: Տարածքը՝ 2,7 հզ. *կմ*², բն.՝ 248,3 հզ. (2013): Մարզկենտրոնը՝ Գյումրի: Ունի 116 գյուղ. և 3 քաղաք. համայնքներ (2014): Մինչև 1988–ի դեկտ–ի *Սպիտակի երկրաշարժը* մարզն իր տնտ. զարգացման մակարդակով և արտադր. ներդրումով ՀՀ–ում 2–րդն էր՝ Երևանից հետո: Երկրաշարժի պատճառով ավերվել է 1,8 մլն *մ*² բնակֆոնդ, շինքերի և արդ. համալիրների 80 %–ը, զոհվել ու խեղվել են շուրջ 25 հզ. մարդ և նույնքան մարդ հեռացել է մարզից: Գործում են մեքենաշինության, գործիքաշինության, ոչ մետաղ. հանքերի շահագործման, ագրովերամշակման և ձեռն–ներ: Զարգացած է հացահատիկ. տնտ–յունը, բանաջարաբուծությունը, անասնապահությունը:

ՇԻՐԱԿԻ ՋՐԱՆՑՔ, Շիրակի մարզում. սկիզբ է առնում Ախուրյան գետից՝ Կապս գ–ի մոտ: Շահագործման է հանձնվել 1925–ին: Ոռոգման համակարգի երկ.՝ 46,3 *կմ*, մայր ջրանցքինը՝ 21,3 *կմ* (2,6 *կմ* թունել): Ջրթողունակությունը՝ 6,6 *մ*³/*վ*: Ոռոգում է Շիրակի մարզի շուրջ 9,8 հզ. *հա* հողատարածք: Ջրանցքի բացման արարողությանը մասնակցել է Ֆ. *Նանսենը*:

ՇԻՐԱԿՅԱՆ Արշավիր (1900–1973), ժող. վրիժառու: Գործուն մասնակցություն է ունեցել «*Նեմեսիս*» գործողությանը: 1921–ի դեկտ. 5–ին Հռոմում ահաբեկել է Թուրքիայի մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշային, 1922–ի ապրիլի 17–ին Բեռլինում՝ Արամ *Երկանյանի* հետ՝ թուրք քաղ. գործիչներ Բեհաէդդին Շաքիրին և Ջեմալ Ազմիին: 1923–ից՝ ԱՄՆ–ում:

ՇԻՐԱԿՅԱՆ Խաչիկ Միհրանի (1931–2001), քամանչահար: ՀՀ վաստ. արտիստ (1982): 1947–95–ին նվագել է Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների, 1995–2001–ին՝ «Վերածնունդ» անսամբլներում: Արամ *Մանդակունյանի* ստեղծագործությունների առաջին կատարողը: Համամիութ. և հանրապետ. փառատոների դափնեկիր:

ՇԻՐԱՅ (Մանուկյան) Նազի Ալեքսանդրի, **Շիրայ Նազե** (1928–մ. թ. անհտ), կրկեսի քուրդ արտիստուհի, ժոնգլյոր: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1958): 1956–85–ին՝ Հայկ. կրկեսի կոլեկտիվի հիմնադիր արտիստներից: Հայկ. և քրդ. պարերի ու երաժշտ. տարրերով մենահամարի հեղինակ–կատարող էր (1954): ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան:

ՇԻՐԻՆ (Կարապետյան Հովհաննես Կարապետի, 1827–1857), աշուղ: 2 տարեկանում կուրացել է: Հիանալի ձայնի, սրտառուչ երգելու համար անվանվել է «Շ.» (քաղցր): Պահպանվել են Շ–ի 40 հայ. և 100–ից ավելի թուրք. երգեր: Առաջին երգերը տպագրվել են 1850–ին Գ. Պատկանյանի «Արարատ» (Թիֆլիս) թերթում, ապա՝ «Բազմավէպում»: Լույս են տեսել Շ–ի երգերի ժող–ները (1856, 1891, «Նոր քնար»): Ճանաչված են Շ–ի «Այգեպան», «Ակնարկյա», «Կորած յափնջին» և այլ երգեր:

ՇԻՐԻՆՅԱՆ Լևոն Ղազարի (ծ. 1953), քաղաքագետ: Քաղ. գիտ. դ–ր (2007), պրոֆ. (2015): Աշխ–ները վերաբերում են ժամանակակից երկրաքաղ. տեսություններին և արդի Հայաստանի երկրառազմավարության գերակայություններին, ինչպես նաև տարածաշրջ. անվտանգության և երկրաքաղ. հիմնախնդիրներին, հակամարտություններին, քաղաքակրթության խնդիրներին և այլ հարցերի: Առաջարկել է ՀՀ արդիականացման տեսություն:

ՇԻՐԻՆՅԱՆ Սանե–Էռնա Սերգեյի (ծ. 1952), պատմաբան, բյուզանդագետ: Պատմ. գիտ. դ–ր (2002): Մոսկվայում հրատարակվող «Ուղղափառ հանրագիտարանի» (ռուս.) հայաստան. համակարգող (2003–ից): Աշխ–ները վերաբերում են Հունաբան դպրոցի թարգմ–յուններին, վաղբյուզ. և հայկ. պատմագրությանը, հայ–հուն. մշակույթ. կապերին:

ՇԻՐԻՆՅԱՆՑ Ալեքսանդր Անդրեյի (ծ. 1961), փիլ., քաղաքագետ: Քաղ. գիտ. դ–ր (2002), պրոֆ. (2004): Աշխ–ները վերաբերում են XIX դ–ի և XX դ–ի սկզբի Ռուսաստանի հաս. մտքի պատմությանը: «Քաղաքական տեքստաբանություն» ծրագրի (ՄՊՀ) ստեղծողներից: «Ռուսաստանի սոցիալ–քաղաքական միտքը» մատենաշարի (1995–ից) խմբագր. խորհրդի նախագահ:

ՇԻՐԿՈՎ Դմիտրի Վասիլևիչ (1928–2016), ռուս ֆիզիկոս–տեսաբան: ՌԳԱ ակադ. (1994): Աշխ–ները վերաբերում են դաշտի քվանտ. տեսությանը, գերհաղորդականությանը, ուժեղ փոխազդեցություններին: Ն. Ն. Բոգոլյուբովի (1909–1992) հետ ստեղծել է խոտորումների աքսիոմատիկ տեսությունը և մշակել վերանորմալացման խմբերի մեթոդը: Լենինյան (1958), ԽՍՀՄ Պետ. (1984) մրց–ներ:

ՇԻՐՄԱ, Գրիգորի Ռոմանովիչ (1892–1978), բելառուս խմբավար, բանահավաք: ԲԽՍՀ (1949), ԽՍՀՄ (1955) ժող. արտիստ: Սոց. աշխ. հերոս (1977): Բելառուսի պետ. ակադեմ. երգչախմբի հիմնադիրը (1940, գեղ. ղեկ.՝ մինչև 1970–ը, 1978–ից՝ Շ–ի անվ.): Հավաքել և ուսումնասիրել է բելառուս. ժող. երգեր: ԲԽՍՀ Պետ. մրց. (1966, 1974):

ՇԻՐՄԱԶԱՆ (Շիրմազանյան) Գրիգոր Վասիլի (1892–1964), ճարտարագետ–շինարար: ՀԽՍՀ վաստ. իոհգատոր (1957): 1925–28–ին Շ–ի ղեկավարությամբ կառուցվել են Այդր (այժմ՝ Մեծամոր) լճի ջրհան կայանը և շրջակա ոռոգման համակարգը: Զբաղվել է ՀԽՍՀ ոռոգման և ջրամատակարարման հարցերի ուսումնասիրությամբ:

ՇԻՐՇՈՎ Պյոտր Պետրովիչ (1905–1953), ռուս. ջրակենսաբան: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939): ԽՄ հերոս (1938): Մասնակցել է «Սիբիրյակով» (1932), «Չելյուսկին» (1933–34) և հոսընթացով շարժվող «ՀԲ–1» (1937–38) բևեռ. կայանների արշավներին: ԽՍՀՄ ժողկոմ (1942–48), ծով. նավատորմի նախարար, ԽՍՀՄ ԳԱ օվկիանոսագիտ–յան ինստ–ի հիմնադիր–տնօրեն (1946–ից):

ՇԻՐՎԱՆ, պատմ. մարզ Կասպից ծովի արմ. ափին: «Շ.» անվանումը հայտնի է Սասանյանների (226–651) ժամանակաշրջանից: 779–1538–ին Շ–ում կառավարել են շիրվանշահերը: Մայրաքաղաքն էր Շամախին: 1748–ին Շ–ի տարածքում ստեղծվել է անկախ պետություն՝ Շիրվանի խանությունը, որը 1805–ին միացել է Ռուսաստանին: Ներկայում Ադրբեջանի կազմում է:

ՇԻՐՎԱՆԶԱԴԵ (Մովսիսյան Ալեքսանդր Մինասի, 1858–1935), գրող, դրամատուրգ: ՀԽՍՀ և Ադրբ. ԽՍՀ ժող. գրող (1930): Անդրկովկասի մշակույթի վաստ. գործիչ: Հեղինակ է «Նամուս» (1885), «Արամբին» (1888), «Զուր յոյսեր» (1890), «Արաէն Դիմաքսեան» (1893) վեպերի, «Գործակատարի յիշատակարանից» (1893), «Յաւագարը» («Հար ոգի», 1894, կինոնկար՝ 1927), «Կրակ» (1896), «Արտիստը» (1901, կինոնկար՝ 2010) վիպակների, «Հրդեհ նաւթագործարանում» (1883) պատմվածքի, «Կյանքի բովից» (1926–32) հուշագրության: Հայ ռեալիստ. արձակի նշանավոր գործերից է Շ–ի «Քաոս» (1898, կինոնկար՝ 1973) վեպը, որտեղ ներկայացրել է XIX դ–ի վերջի Բաքվի արդ. միջավայրը: Բացառիկ է Շ–ի դերը հայ դրամատուրգիայի և թատրոնի պատմության մեջ. «Եւգինէ», «Ունէ՞ր իրաւունք» (երկուսն էլ՝ 1903), «Պատուի համար» (1905, կինոնկար՝ 1956), «Կործանուածը» (1909), «Աւերակների վրայ» (1911), «Մորգանի խնամին» (1930, կինոնկար՝ 1970) և այլ սոցիալ–հոգեբ. դրամաներ ու կատակերգություններ և այլ գործեր:

ՇԻՐՎԱՆՇԱՀ (պարսկ. – առյուծ շահ), *Շիրվանի* կառավարիչների տիտղոս՝ 799–1538–ին: Հայտնի են Մազյադի (799–1027), Քասրանի (1027–1382) և Դերբենդի (1382–1538) Շ–երի հարստությունները:

ՇԻՐՎԱՆՇԱՀԵՐԻ ՊԱԼԱՏ, ճարտ. հուշարձան Բաքվում: Ընդգրկում է պալատը, Դիվանխանեն, տապանատունը (1435/36), Սեյիդ Յախյա Բակուվիի դամբարանը, մզկիթը (1441/42), Արլ. դարպասը (1585) ևն:

«ՇԻՑԶԻՆ» («Երգերի գիրք»), չին. գր. հուշարձան (մ. թ. ա. XI–VI դդ.): Ընդգրկում է 305 երգ և բանաստեղծություն: Արտացոլում է Չինաստանի հոգևոր և սոցիալ. կյանքի բազմազան երևույթներ: Ընտրությունը և խմբագրությունը վերագրում են *Կոնֆուցիոսին*:

ՇԻՑՅԱՆԱԶՈՒԱՆ (Շիմեն), ք. Հս. Չինաստանում, Հեբեյ պրովինցիայի վարչ.

կենտրոնը: Բն.՝ 2,4 մլն (արվարձաններով՝ 3,1 մլն, 2010): Տրանսպորտ. հանգույց է: Կա օդանավակայան: Դեղագործ. և տեքստիլ արդ-յան խոշոր կենտրոն է: Մերձակայքում կան ածխի և երկաթի հանքավայրեր:

ՇԻՖՈՆ (ֆրանս.՝ chiffon – բառացի՝ փալաս), նուրբ մետաքսանման, խիտ հյուսվածքի բամբակե գործվածք: Օգտագործվում է սպիտակեղեն, վերնազգեստ կարելու համար, նաև քիմ. արդ-յան մեջ:

ՇԻՖՐԻՆ Նիսոն Աբրամովիչ (1892–1961), ռուս. բեմանկարիչ: ՌԽՖՍՀ ժող. նկարիչ (1958): 1935-ից՝ Մոսկվայի Խորհրդ. բանակի կենտր. թատրոնի գլխ. նկարիչ: Զևավորել է Վ. Շեքսպիրի «Անսանձ կնոջ սանձահարումը» (1937), «Հերկած խոպան» (1957, ըստ Մ. Շոլոխովի) և այլ ներկայացումներ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949, 1951):

ՇԼԴՅԱՆ (Շիլդյան) Գրիգոր Հովհաննեսի (1900–1985), նկարիչ: Հեղինակ է թեմատիկ և խորհրդանշ. հորինվածքների, դիմանկարների, նատյուրմորտների («Բաքոսը գինետանը», 1936, «Թափառաշրջիկներ», 1942, «Ֆիլատելիստը», 1947, «Գողերի դպրոցը», 1957, «Երկու տարիք», 1957, ևն), որոնց բնորոշ են ձևերի պարզությունը, հոգեվիճակների նուրբ մեկնաբանումը: Միլանի «Լա Սկալա» օպեր. թատրոնում ձևավորել է ներկայացումներ, նկարազարդել Լ. Ն. Տոլստոյի «Աննա Կարենինա» վեպը (120 ջրաներկ թերթեր) ևն: 1958-ին այցելել է Հայաստան, Էջմիածնի Մայր տաճարի համար ստեղծել է «Հայկական Աստվածամայրը» նկարը: Հեղինակ է «Գեղանկարչության տրակտատը» (հտալ., 1976) աշխ-յան:

ՇԼԵԳԵԼ (Schlegel) Ֆրիդրիխ (1772–1829), գերմանացի քննադատ, փիլ., բանասեր, գրող: Գերմ. հնդկաբանության հիմնադիրներից: Հեղինակ է «Հնդիկների լեզվի և իմաստության մասին» (1808) հիմնարար աշխ-յան: «Կյանքի փիլիսոփայություն», «Պատմության փիլիսոփայություն», «Լեզվի և բառի փիլիսոփայություն» (երեքն էլ՝ 1820-ական թթ-ի վերջ) երկերի:

ՇԼԵԶԻՆԳԵՐ (Schlesinger) Ջոն (1925–2003), հրեա կինոռեժ.: Ֆիլմերում կարևորել է կյանքի հանդիսավորությունը, հասյան կեղծ արժեքների քննադատությունը («Կեսգիշերային կովբոյ», 1969, «Կիրակի, անիծյալ կիրակի», 1971, «Մորեխների օրը», 1975, «Մարաթոնի վազորդը», 1976, «Հավատացյալները», 1987, «Պատուհան դեպի Խաղաղ օվկիանոս», 1990, «Ամեղը», 1993, ևն):

ՇԼԵԶԻՆԳԵՐ Ֆրենկ (1871–1943), ամերիկացի աստղագետ: Աշակել է աստղերի պարալաքսների որոշման մեթոդ, կազմել մեծ ճշգրտության աստղ. մի քանի աստղացուցակներ: Առաջինը սպեկտրի միջոցով հայտնաբերել է (1909) կրկնակի մթնեցված աստղերի պտույտը:

ՇԼԵԶՎԻԳ–ՀՈԼՇՏԱՅՆ (Schleswig-Holstein), երկրամաս ԳԴՀ հս-ում: Տարածքը՝ 15,7 հզ. *կմ*², բն.՝ 2,8 մլն (2011): Վարչ. կենտրոնը՝ *Քիլ*:

ՇԼԵՅԴԵՆ (Schleiden) Մաթիաս Յակոբ (1804–1881), գերմանացի բուսաբան: Բուսաբ-յան մեջ օնտոգենետիկ մեթոդի հիմնադիրը: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1850): Աշխ-ները վերաբերում են բույսերի անատոմիայի ձևաբանության և բջջաբանության հարցերին, որոնք կարևոր դեր են խաղացել Թ. *Շվանի* բջջ. տեսության հիմնավորման գործում:

ՇԼԵՅԵՐՄԱԽԵՐ (Schleiermacher) Ֆրիդրիխ (1768–1834), գերմանացի բողոք. աստվածաբան և փիլ.: Կրոնը մեկնաբանել է որպես ներքին ապրում, անսահմանից «կախվածության» զգացում («Ճառեր կրոնի մասին», 1799): Թարգմանել է Պլատոնի երկերը: Հեղինակ է «Դիալեկտիկա» (1804), «Քրիստոնեական հավատը՝ ըստ Ավետարանական եկեղեցու սկզբունքների (հ. 1–2, 1821–22) և այլ աշխ-ների:

ՇԼԵՊՉՅԱՆ Նարա Սուրենի (ծ. 1935), հաղորդավարուհի: ՀՀ ժող. արտիստ (1986): Հայաստանի հեռուստատեսության 1-ին հաղորդավարուհին (1956): Հեղինակ է հեռուստասցենարների և հաղորդումների:

ՀՀ «Սովսես Խորենացի» (2001), ՀՀ Ա.Ժ նախագահի Պատվո (2011), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի (2016) մեդալներ:

ՇԼԻԿ (Schlick) Մորից (1882–1936), ավստրիացի փիլ. և ֆիզիկոս: Վիեննական խմբակի հիմնադիրը: Ըստ Շ-ի՝ բնության օրենքները ձևական կանոններ են, որոնք բնորոշվում են նկարագր. լեզվի շարահյուսությամբ: Ձևակերպել է վերիֆիկացման սկզբունքը: Հեղինակ է «Պոզիտիվիզմ և ռեալիզմ» (1937) աշխ-յան:

ՇԼԻՄԱՆ (Schliemann) Հենրիխ (1822–1890), գերմանացի հնագետ: Հայտնաբերել է *Տրոյան* (Հիսարլիկ բլրի վրա, Փոքր Ասիա) և միկենյան մշակույթը (Պելոպոնես թ-կղզի, Հունաստան): Պեղումներ է կատարել նաև Միկենեում, Օրքոմենոսում, Տիրինթոսում և այլ վայրերում:

ՇԼԻՖԵՆ (Schlieffen) Ալֆրեդ ֆոն (1833–1913), կոմս, գերմանացի ռազմ. տեսաբան, գեն-ֆլդմ (1911): 1891–1905-ին՝ ԶՈՒ ԳՇ պետ: Աշակել է հակառակորդի մեկ կամ երկու թևերին վճռական հարվածի միջոցով նրան շրջապատելու և ոչնչացնելու տեսությունը: Երկու ճակատով՝ Ֆրանսիայի և Ռուսաստանի դեմ պատերազմի պլանի հեղինակն էր, որը, որոշ փոփոխություններով, Գերմանիան իրագործել է ԱՀՊ-ի սկզբին:

ՇԼՅԱԳԵՐ (գերմ.՝ Schlager), նորաձև, հանրամատչելի, զվարճալի երգ (սովորաբար՝ էստրադ.՝ սիր-քնար. տեքստով) կամ մեծ ժողովրդականություն վայելող երաժշտ. գործ:

ՇԼՅԱԽՏԱ (լեհ.՝ szlachta), աշխարհիկ ազնվականության անվանումը: Կենտր. Եվրոպայի մի շարք երկրներում (հատկապես՝ Լեհաստանում, Լիտվայում):

ՇԼՅՈՆԴՈՐՖ (Schlöndorff) Ֆոլկեր (ծ. 1939), գերմանացի կինոռեժ.: Մ. Ֆոն *Տրոփպայի* ամուսինը: Նկարահանել է «Երիտասարդ Տյոռլեսը» (1966), «Պատահական և կանխամտածված սպանություն» (1967), «Կատարինա Բլյումի անարգված պատիվը», (1975, կնոջ հետ), «Թիթեղե թմբուկ» (1979, «Օսկար», 1980), «Ճանապարհորդը» (1991), «Ույժան՝ մոռացված աշխարհ» (2007) և այլ ֆիլմեր:

«Օսկար», Կաննի կփ «Արմավենու ոսկե ճյուղ» մրց-ներ (երկուսն էլ՝ 1979):

ՇԼՅՈՅԵՐ (Schloezer de) Բորիս (Ֆեոդորովիչ, 1881–1969), ֆրանսիացի ռուսագիր գրականագետ, երաժշտ. և գր. քննադատ, թարգմանիչ: 1920-ից՝ Փարիզում: Հեղինակ է Ի. Ֆ. Ստրավինսկուն, Ա. Ն. Սկրյաբինին (ռուս., 1923), Յ. Ս. Բախին նվիրված, «Ժամանակակից երաժշտության խնդիրները» (1959, համահեղ.) երաժշտագիտ. և այլ աշխ-ների, «Իմ անունն է ոչ ոք» (1969) վեպի, նաև վիպակների: Թարգմանել է Լ. Շեստովի փիլ. աշխ-ներից, Ֆ. Մ. Դոստոևսկու, Լ. Ն. Տոլստոյի գործերից:

ՇԼՅՈՒՊ (հոլ.՝ sloep), 1. ուղիղ առագաստներով եռակայմ առագաստանավ XVIII–XIX դդ-ում (ըստ չափերի՝ կորվետի և բրիգի միջև): 2. Ժամանակակից որոշ ՌԾՆ-ներում փոխադրամիջոցների կրավանների դանդաղընթաց պահականավ: 3. Առագաստ. հանդերձման առավել տարածված տեսակը ժամանակակից փոքր և միջին չափերի միակայմ մարզանավերում (զրոսանավերում):

ՇԼՅՈՒՏԵՐ (Schlüter) Անդրեաս (մոտ 1659–1714), գերմանացի ճարտ., քանդ.: *Բարոկկոյի* ոճով կառուցել է հանդիսավոր, վեհաշուք շենքեր (Թագավոր. պալատը, 1698–1707, Ֆրիդրիխ Վիլհելմի հուշարձանը, 1696–1703, երկուսն էլ՝ Բեռլինում): Ս. Պետերբուրգի Ամառ. պալատի հարդարման (1713–14) հեղինակն է:

ՇԼՈՍԵՐ (Schlosser) Ֆրիդրիխ Քրիստոֆ (1776–1861), գերմանացի պատմաբան: Հեղինակ է «Համաշխարհային պատմություն» (հ. 1–19, 1844–56) հիմնարար աշխ-յան:

ՇԼՈՒԹՅՈՒՆ, ստրաբիզմ, աչքերի համաձայնեցված շարժումների խանգարումը, երբ մեկ աչքի տեսող. առանցքն ուղղված է դիտվող առարկայի վրա, իսկ մյուսինը շեղված է դեպի քիթը (համամիտվող Շ.) կամ դեպի քունքը (տարամիտվող Շ.): Հաճախ զարգանում է 3–4 տարեկանում:

ՇԽԱՐԱ, Մեծ Կովկասի Գլխ. կամ Ջրբաժան լ-շղթայի կենտր. մասի ամենաբարձր (5068 *մ*) գագաթը: Հս. կողմում՝ Բեզենգի, հվ-ում Շխարա սառցադաշտերն են:

ՇԽՈՅԱՆ Աննա Սեմյոնի (1905–1990), բուսաբան-կարգաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1974): Աշխ-ները վերաբերում են բարձրակարգ բույսերի կարգաբանությանը, նոր տաքսոնների հայտնաբերմանն ու նկարագրությանը: Մասնակցել է «Վրաստանի ֆլորան» (1-ին և 2-րդ հրտ-ներ), «Վրաստանի բույսերի որոշիչ» և «Հայաստանի ֆլորան» գրքերի կազմմանը:

ՇԿԱՖԵՐ Վասիլի Պետրովիչ (1867–1937), ռուս. երգիչ (տենոր), ռեժ. (ծագումով՝ հրեա): ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1925): 1897-ից՝ Մոսկվայի Ս. Ի. Մամոնտովի մասնավոր օպերայի, 1904–24-ին (ընդմիջումով)՝ Մոսկվայի Մեծ թատրոնի (1911–17-ին՝ գլխ. ռեժ.) մեներգիչ, 1924–35-ին՝ Լենինգրադի ՕԲԹ-ի մեներգիչ և ռեժ.:

ՇԿԼՅԱՐԵՎՍԿԻ Իգոր Իվանովիչ (ծ. 1938), ռուս բանաստեղծ: Հեղինակ է «Գալի՛ս եմ» (1962), «Ճակատագիր» (1968), «Կամք» (1972), «Յրտելը» (1975), «Լսում եմ երկնքին ու երկրին» (1985), «Գավառական պոեզիա» (2002) և այլ քնար. բանաստեղծությունների ու պոեմների, «Թռչնի ստվերը» (1976) արձակ գործերի ժող-ների, ««Ասք Իգորի ճակատամարտի մասին» էպոսի հանելուկներն ու գաղտնիքները» (1998) աշխ-յան և այլ գործերի:

ԽՍՀՄ (1987), ՌԴ Ա. Ս. Պուշկինի անվ. (1999) Պետ. մրց-ներ:

ՇԿԼՈՎՍԿԻ Վիկտոր Բորիսովիչ (1893–1984), հրեա գրող, գրականագետ: Հեղինակ է «Սենտիմենտալ ճանապարհորդություն», «Zoo կամ Նամակներ ոչ սիրո մասին…» (երկուսն էլ՝ 1923) և այլ ինքնակենսագր. երկերի, «Համբուրգյան հաշիվ» (1928) գրաքննադատ. հոդվածների ժող-ի, Լ. Ն. Տոլստոյի, Ֆ. Մ. Դոստոևսկու, Վ. Վ. Մայակովսկու մասին, նաև «Էյզենշտեյն» (1973) աշխ-ների, նաև

պատմագեղ. վիպակների, հուշերի, էսսե-ների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1979):

ՇԿՈԴԱ (Škoda) Յոզեֆ (1805–1881), ավստրիացի չեխ թերապևտ: Հիմնավո-րել է ընդբախման (պերկուսիա) և լսման (աուսկուլտացիա) գիտականությունը:

ՇԿՈԴՐԱՆԻ (Shkodrani) Վասո Պաշա (Պաշկո Վասա, 1825–1892), ալբան գրող: Հեղինակ է «Ճշմարտություն Ալբանիայի և ալբանների մասին» (1879) աշխ-յան, «Բարդա Թեմալ, պատկերներ ալբանա-կան կյանքից» (1890) վեպի, «Օ՜, իմ Ալբա-նիա» հայրենասիր. պոեմի և այլ գործերի:


ՇԿՎՈՐԵՑԿԻ (Škvorecký) Յոզեֆ (1924–2012), չեխ գրող: 1968-ից՝ վտարանդի (ԱՄՆ, Կանադա): Հեղինակ է «Նայլոնի դարի վախճանը» (1967), «Տաննկային զո-բամիավորում» (1969), «Կորյուն» (1969), «Երկու սպանություն իմ երկակի կյանքում» (1996) դետեկտիվ և այլ վեպերի: Չեխիայի Հանրապետության Պետ. մրց. (1999):

ՇԿՐՈՈՒՊ (Skroup), չեխ կոմպոզիտոր և դիրիժոր եղբայրներ: 1. **Ֆրանտիշեկ Շ.** (1801–1862), 1837–57-ին՝ Պրահայի Դասա-յին թատրոնի գլխ. դիրիժոր: Հեղինակ է 10 օպերայի և զինգշպիլի («Դրոտար», բեմ.՝ 1826): 2. **Յան Նեպոմուկ Շ.** (1811–1892), ճա-նաչվել է հայրենասիր. խմբերգերով («Չեխ դյուցազուններ» ևն), հեղինակ է նաև օպե-րաների, մեսսաների, տես. աշխ-ների ևն:

ՇԿՈՒՐՈ Անդրեյ Գրիգորևիչ (1887–1947), ռուս. ռազմ. գործիչ, Սպիտակ շարժման զորապետ, գեն-լեյտ. (1919): 1919-ին՝ Ռուսաստանի հվ-ի ռազմ. ուժերի հեծյալ կորպուսի հրամ.: 1920-ից՝ վտարանդի: ՀՄՊ-ի ժամանակ համագործակցել է գերմ. հրամանատարության հետ: 1945-ին Ավստրիայում գերեվարել են անգլիացի-ները և հանձնել խորհրդ. հրամանատա-րությանը: Մահապատժի է ենթարկվել:

ՇՂԱԳԻՐ, **շեղ գիր**, պնակիտի վրա եղեգ-նյա գրչով (գրչի մի ծայրը տափակ՝ մոմը հարթելու, մյուսը՝ շյուղի նման սուր՝ գրե-լու համար) գրելու եղանակ (շյուղագիր, շեղագիր), որը հետագայում դարձել է ինքնուրույն գրատեսակ: Շ. ունի հայ. գրի բոլոր տեսակները:

ՇՂԹԱՅԱԿԱՆ ԳԻԾ, հարթ կոր (նկ.), որի ձևն ընդունում է ծայրերը 2 կետերում ամրացված ճկուն, համասեռ և ձգվող ծանր թելը (մոտավո-րապես այդ ձևն են ընդունում շղթան, հեռագրալարը, որոնք կախվում են ծանրության ուժի ազդեցությամբ): Շ. գ. տրասցենդենտ կոր է, նրա հավասարումն է՝ $y = a\,\mathrm{ch}\frac{x}{a}$, որտեղ ch-ը հիպերբոլական կոսինուսն է:



ՇՂԹԱՅԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ, քիմ. և միջուկ. երևույթներ, որոնց ընթացքում վերջնանյութերն առաջանում են մի-ջանկյալ ակտիվ մասնիկների՝ ակտիվ կենտրոնների մասնակցությամբ ընթա-գող և այդ մասնիկները վերարտադրող տարր. փոխարկումների անընդհատ կրկնությամբ: Ակտիվ կենտրոնը (Ա. կ.) հեշտությամբ փոխազդում է ելանյութի մոլ-ի (միջուկ. ռեակցիաների ժամանակ՝ միջուկի) հետ՝ առաջացնելով վերջնա-նյութի մոլ-ը (միջուկը) և նոր Ա. կ., որը շարունակում է ռեակցիան: Միջուկ. Շ. ռ-ում Ա. կ-ներ են նեյտրոնները, քիմ. Շ. ռ-ում՝ ազատ ատոմները և ռադիկալները, երբեմն՝ նաև գրգռված մոլ-ները:

ՇՃԱԹԱՎԱՆԹ, մարդու և կենդանիների մարմնի ներքին խոռոչները ծածկող թա-ղանթը: Ըստ տեղադրության՝ տարբերում են որովայն., կրծքամզային, սրտապար-կային և այլ Շ-ներ: Շ. արտադրում է շճային հեղուկ, որը հեշտացնում է ներքին օրգանների շարժումները, կատարում պաշտպ. ֆունկցիա:

ՇՄԱԿՈՎ Պավել Վասիլևիչ (1885–1982), հեռուստատեսության բնագավառի ռուս գիտնական: ՌԽՖՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1948): Սոց. աշխ. հերոս (1966): Աշխ-ները վերաբերում են գունավոր և տարածադիտ. հեռուստատեսությանը, ֆաքսիմիլ. կապին: Հայտնագործել է (1933) գերկոնադիտակը (սուպերիկոնոս-կոպ): ԽՍՀՄ Պետ. մրց. (1973):

ՇՄԱՎՈՆ, XV դ-ի հոգևոր գործիչ, գրիչ: 1437-ին Սանահինում ընդօրինակել է Շարակնոց, որը ծաղկել է Հովհաննես Սանահնեցի վանահայրը (Մտնդ., ձեռ. № 8979, 218 բ էջում կա Շ-ի պատկերը, հի-շատակարանում՝ անունը): Պահպանվել է նաև Անգեղակոթի եկեղեցուն Շ-ի նվի-րած Ավետարանը (Մտնդ., ձեռ. № 3756):

ՇՄԱՎՈՆՅԱՆ Հարություն Շմավոնի, **Շիրազեցի** (1750–1824), տպագրիչ, հաս. գործիչ, հայ. 1-ին պարբ-ի՝ ***«Ազդարար»***-ի (1794–96, Մադրաս) հիմնադիրը: 1789-ին հիմնադրել է Մադրասի 2-րդ հայկ. տպա-րանը, տպագրել շուրջ 10 անուն գիրք:

ՇՄԱՎՈՆՅԱՆ Շմավոն Ռաֆիկի (ծ. 1953), գեղանկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (2011): Հե-ղինակ է «Հավերժություն» «Երգ երգոց», «Հույս», «Զրոսանք», «Գորիս», «Ծաղկա-զարդ», «Հանդիպում», «Հրեշտակներ», «Մեր տունը», «Երկրային նժույգի թռիչ-քը» և այլ գործերի:

ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան (2012), Ֆրիտյոֆ Նանսեն հիմնադրամի հուշամեդալ (2007), ՀՀ ՄՆ (2009), Երևա-նի քաղաքապետի ոսկե (2016) մեդալներ:

ՇՄԱՎՈՆՅԱՆ Զիվան Մամբրեի (1918–1982), կուրորտաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1969), պրոֆ. (1969): Ուսումնասիրել է ստամոքսաղիք. համակարգի վրա «Սևան» և «Հանքավան» հանք. ջրերի բուժիչ ազդեցությունը:

ՀԽՍՀ ստամոքսաղիքաբանների գիտ. ընկ-յան հիմնադիր-նախագահ (1972–82):

ՇՄԱՐԻՆՈՎ Դեմենտի Ալեքսեևիչ (1907–1999), ռուս. գրաֆիկ: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1967): ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի անդամ (1953): Պատկերազարդել է (Ա. Ս. Պուշ-կինի գործերից (1937–76), Լ. Ն. Տոլստոյի «Պատերազմ և խաղաղությունը» (1953–55, Լենինյան մրց., 1980), ունի հատոց. գծանկարներ («Չե՞նք մոռանա, չե՞նք ների», 1942, շարք, ԽՍՀՄ Պետ. մրց., 1943):

ՇՄԵԼՅՈՎ Իվան Սերգեևիչ (1873–1950), ռուս գրող: 1922-ից՝ վտարանդի: Հեղի-նակ է «փոքր մարդու» մասին «Քաղա-քացի Ուկլեյկինը» (1908), «Մարդը ռես-տորանից» (1911) և այլ պատմվածքների ու վիպակների, «Ամառը՝ Տիրոջը» (1933), «Ուխտագնացություն» (1935) ինքնակեն-սագր. վիպակների, «Մոսկվացի դայակը» (1936) վեպի և այլ գործերի:

ՇՄԵՄԱՆ (Schmemann) Ալեքսանդր Դմիտ-րևիչ (1921–1983), ուղղափառ աստվածա-բան, եկեղեցու պատմաբան, քարոզիչ, ավագ երեց (1970): Ամերիկյան ռուս վտա-րանդիների ընտանիքից: Շ. «եվխարիս-տիայի էկլեզիոլոգիայի» հիմնադիրներից է: Հեղինակ է Պատարագի աստվածա-բանությանը և եկեղեցու պատմությանը վերաբերող երկերի: Մեծ ազդեցություն է ունեցել Ամերիկայում Ուղղափառ ավտո-կեֆալ եկեղեցու (1970) ձևավորման վրա:

ՇՄԻԴԵԲԵՐԳ (Schmiedeberg) Օսվալդ (1838–1921), գերմանացի դեղաբան, փորձարար. դեղաբանության հիմնա-դիրներից: Ուսումնասիրել է սրտի վրա նիկոտինի և մուսկարինի ազդեցությու-նը: Անջատել է մագնոցուկի հիմն. ազ-դող նյութը՝ դիգիտոքսինը: Ապացուցել է [կենսաքիմիկոս Գ. Բունգեի (G. Bunge, 1844–1920) հետ] երիկամներում ***հիպու-րաթթվի*** առաջացումը: Հիմնադրել է առաջին դեղաբան. ամսագիրը (1925):

ՇՄԻԴՏ (Schmidt) Առնո (1914–1979), գեր-մանացի գրող: Հեղինակ է «Քարե սիրտը» (1956), «Գիտնականների հանրապետե-ությունը» (1957) վեպերի, «Օրփեոս» (1970), «Ալեքսանդր կամ Ինչ է ճշմարտությունը» (1975) պատմվածքների ժող-ների, նաև գր-տես. աշխ-ների:

ՇՄԻԴՏ Հելմուտ (1918–2015), ԳԴՀ դաշն. կանցլեր՝ 1974–82-ին: 1969–72-ին՝ պաշտպ-յան, 1972–74-ին՝ էկոնոմիկայի և ֆինանսների նախարար:

ՇՄԻԴՏ Միխայել Յոհան (1843–1904), գերմանացի հայագետ-թարգմանիչ, աստվածաբան: 1871-ին գերմ. լույս է ընծայել Հովհաննես Ա. Մանդակունու ճառերը, 1872-ին՝ Գրիգոր Լուսավորչի «Համախապատումը» իր առաջաբանով, 1900-ին՝ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդո-ցը»՝ իր ներածությամբ ու ծնթգր-ներով: Թարգմանել է նաև «Հանգիստ Յոհան-նու առաքելոյ» ճառը (1893) և «Թադէոսի առաքելոյն եւ Սանդխտոյ կուսին» վկա-յաբանությունը (1903):

ՇՄԻԴՏ Յոհաննես (1843–1901), գերմանա-ցի լեզվաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1892): Հայտնի է հնդեվրոպ. լեզուների տարածման իր «ալիքների տե-սությամբ»: Ըստ Շ-ի՝ հայ-ը միջանկյալ դիրք ունի թրակա-փռյուգ. և հնդիրան. լեզուների միջև: Հեղինակ է հնդեվրոպ. լեզուներին, համեմատ. լեզվաբ-յանը վե-րաբերող աշխ-ների:

ՇՄԻԴՏ Պյոտր Պետրովիչ (1867–1906), 1905-ի Սևաստոպոլի ապստամբության ղեկ., Սևծով. նավատորմի պաշտոնաթող լեյտ.: Գնդակահարվել է: Շ-ի անվան հետ է կապված XX դ-ի 1-ին տասնամյակներին Ռուսաստանում տարածված «Լեյտենանտ Շմիդտի որդիներ» արտահայտությունը:

ՇՄԻԴՏ Օտտո Յուլևիչ (1891–1956), գերմա-նացի գիտնական, պետ. գործիչ, Հս-ծով. ճանապարհի յուրացման կազմակերպիչ-ներից: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1935, փոխ-նախագահ՝ 1939–42-ին), ՈՒկր. ԽՍՀ ԳԱ ակադ. (1934): ԽՄ հերոս (1937): Ղեկավա-րել է «Սեդով» (1929–30), «Սիբիրյակով» (1932), «Չելյուսկին» (1933–34) նավերի արշավախմբերը, «Հյուսիսային բևեռ-1» դրեյֆող կայանի կազմակերպման օդ. արշավախումբը (1937): Առաջարկել է Արեգակնային համակարգի մարմիննե-րի առաջացման տիեզերածն. վարկածը: Խորհրդ. մեծ հանարագիտարանի (ԲՍԷ) հիմնադիրներից և գլխ. խմբ-ը (1924–41):

ՇՄԻԴՏԻ ԿՂԶԻ, Հս. Երկիր կղզեխմբում (ՌԴ)՝ Կարայան ծովում: Տարածքը՝ 430 *կմ²*, բարձր.՝ մինչև 325 *մ*: Հայտնաբերել է Օ. Յ. Շմիդտի ղեկավարած արշավա-խումբը 1930-ին:

ՇՄԻԴՏԻ ՍԱՀՆՕՁ (Hierophis schmidti), **կարմրափոր սահնօձ**, լորտուների ըն-տանիքի օձ: Տարիքի հետ մարմնի երկ-յունը փոխվում է (30–170 *սմ*), պոչը 3–4 անգամ կարճ է մարմնից: Օգտագործում են ԳՀ նպատակներով: Բավական ագրե-

սիվ է, սակայն կծածը մարդու և կենդանիների համար վտանգավոր չէ:

ՇՄԻՏ (Schmitt) Հարիսոն (ծ. 1935), ԱՄՆ աստղագնաց: Գիտ. դ–ր: Թռել է «Ապոլոն–17» տիեզերանավով և վայրէջք կատարել Լուսնի վրա (1972–ի դեկտ.):

ՇՄԻՏ Ռյուդիգեր (ծ. 1939), գերմանացի լեզվաբան, ինդեվրոպաբան, հայագետ: Հեղինակ է «Դասական հայերենի քերականություն» (գերմ., 1981) աշխ–յան: Կազմել և շարունակաբար լրացնում է բոլոր ժամանակներին և աշխարհի տարբեր երկրներում լույս տեսած հայագիտ. ուսումնասիրությունների մատենագիտ–յունը: Մասնակցել է Հ. Հյուբշմանի (1976–ին), Հ. Պեդերսենի (1982–ին) հայագիտ. հոդվածների ժող–ների հրատարակմանը:

ՇՄՈԼ ԳԱԶ, *ածխածնի օքսիդի* կնճացող. անվանումը:

ՇՅՈԳՐԵՆ (Sjögren) Անդրեյ Միխայլովիչ (Յոհան Անդրեաս, 1794–1855), ֆինն բանասեր, ազգագրագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1844): Ուգրա–ֆիննագիտ–յան հիմնադիրը Ռուսաստանում: Գրել է օս–ի առաջին քերակ–ը, կիրիլիցայի հիման վրա ստեղծել նրա գիրը, լիվերենի բառարանը և քերակ–ը:

ՇՅՈՆԲԱՅՆ (Schönbein) Քրիստիան Ֆրիդրիխ (1799–1868), գերմանացի քիմիկոս: Բացահայտել է օզոնը (1840), ստացել պիրօքսիլին (1845):

ՇՅՈՆԼԱՅՆ (Schönlein) Յոհան Լուկաս (1793–1864), գերմանացի թերապևտ: Բեռլինյան գիտ. դպրոցի հիմնադիրը: Հաստատել է գոնջի պատճառագիտ–յունը և դրել սնկախտերի (դերմատոմիկոզներ) վերաբերյալ ուսմունքի հիմքը: Նկարագրել է (1837) արյունահոս. անոթաբորբը (Շյոնլայն–Հենոխի հիվանդություն):

ՇՅՈՐՆԵՐ (Schörner) Ֆերդինանդ (1892–1973), գերմանացի գեն–ֆլդմ. (1945): ԵՀՊ–ի ժամանակ (1944–ից)՝ խորհրդագերմ. ճակատի «Հարավային Ուկրաինա», «Հյուսիս», «Կենտրոն» բանակների խմբավորման հրամ.: Որպես ռազմ. հանցագործի՝ խորհրդ. զինվ. դատարանը դատապարտել է 20 տարվա բանտարկության: Ազատվել է 1955–ին:

ՇՅՈՍՏՐՅՈՄ (Sjöström) Վիկտոր Դավիդ (1879–1960), շվեդ կինոդերասան, ռեժ.: Նկարահանել է «Տերիե Վիգեն» (1917, ըստ Հ. Իբսենի), «Լեռնական Էյվինդը և նրա կինը» (1918), «Ինգմարի որդիները» (1919), «Կառապան» (1921, վերջին երկուսը՝ ըստ Ս. Լագերլյոֆի), «Կարմիր թիկնոցի տակ» (1937) և այլ ֆիլմեր: Իր նկարահանած, նաև «Խոսք», «Մորու բացատը» ֆիլմերի գլխ. դերակատարն է:

ՇՅՈՎԱԼ (Sjöwall) Մայ (ծ. 1935), շվեդ գրող: Ամուսնու՝ Պ. *Վալոյի* հետ գրել է «Ոռգաննա» (1965), «Պատշգամբում կանգնած տղամարդը» (1967), «Մնահետ կորած հրշեջ մեքենան» (1969), «Ահաբեկիչներ» (1975) և այլ դետեկտիվ վեպեր: Համահեղինակ է նաև «Գրետա Գարբոյին նմանվող կինը» (1990), «Վերջին ծխողը» և այլ վեպերի:

ՇՅՈՒՂԱԽՈՏ (Festuca), դաշտավլուկազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Կերաբույս է: Հայտնի է 500 տեսակ, ՀՀ–ում՝ 20՝ բոլոր մարզերում: Աշակում են մարգագետնային, կարմիր, ակոսավոր և այլ Շ–երը: Բերքատվությունը՝ 50 *գ/հա*:

ՇՅՈՒՀ Ալֆրեդ (1899–1959), հրեա փիլ. և սոցիոլոգ: Ֆենոմենոլոգ. սոցիոլոգիայի հիմնադիրներից: 1939–ից՝ վտարանդի (ԱՄՆ): Նրա մշակած ըմբռնող. սոցիոլոգիայի տարբերակի առանցքում առօրյայի և գործունեության վերլուծությունն է:

ՇՅՈՒՀ Էդմոնդ Օդոն (1916–1999), հունգար լեզվաբան, հայագետ: Փիլ. գիտ. դ–ր (1948): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (1990): Հեղինակ է «Նիկոլաս Մ. Կիշը և Ամստերդամի հայ տպագրությունը» (1960), «Հայ–ղփչաղերենի տառադարձության մասին» (1961), «Միջնադարյան հայ գրականության համաբարբառը» (1975, երեքն էլ՝ անգլ.), «Հայերի հայ–ղփչաղերեն լեզուն և Ղրիմը» (1976), «Հայերի մասին» (1977), «Հայկական գաղութը Ղրիմում» (անգլ., 1980), «Ղրիմում հայերի գաղթի վերջին փուլը» (անգլ., 1986), «Հայ գրականության անթոլոգիա. Խորենացուց մինչև Սայաթ–Նովա» (1986) և այլ աշխ–ների: ՄՏԿԿ շքանշան:

ՇՆԱԳԱՅԼ, *գայլազգիների* ընտանիքի կենդանի: Արտաքինով նման է *գայլի*: Մարմնի երկ.՝ 68–105, պոչինը՝ 22–27 *սմ*, կ. գ.՝ 6–14 *կգ*: ՀՀ–ում տարածված է Արաքս գետի առափնյա եղեգնուտներում, Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի, Տավուշի մարզերում: Մորթին ցածրարժեք է: Վնաս է հասցնում որսորդ. տնտ–յուններին:

ՇՆԱԽՈՏ (Cynanchum), **թունաթափ**, թունաթափազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 4 (5) տեսակ, ՀՀ–ում՝ Տավուշի, Սյունիքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի մարզերի ստորին և միջին–լեռն. շրջաններում, Երևանի շրջակայքում:

ՇՆԱՉԿՆԵՐ (Selachii), թերթախիկավոր ձկների վերնակարգ: Երկ.՝ 0,2 (սև փշոտ Շ.) – 20 (հսկա Շ.) *մ*: Հայտնի է 21 ընտանիքի մոտ 250 տեսակ: Արդյունագործ. ձուկ է (միսն օգտագործվում է սննդի մեջ, լյարդից ստանում են ձկան յուղ, կմախքից՝ սոսինձ): Խոշոր Շ. վտանգավոր են մարդկանց համար:

ՇՆԱՅԴԵՐ Ռոմի (Ռոզմարի Ալբախ–Ռետտի, 1938–1982), ավստրիացի կինոդերասանուհի: Կնոջ բնավորության արտահայտել է «Լյուդվիգ», «Կյանքի մանրուքները», «Գնացք», «Հասարակ պատմություն», «Հին հրացանը», «Հանցավոր ռեպորտաժ», «Լողավազան» և այլ ֆիլմերում: Ֆրանսիայում սահմանվել է Շ–ի անվ. մրց. (1984–ից):

ՇՆԴԵՂ (Colchicum), շուշանազգիների ընտանիքի բազմամյա պալարասոխուկավոր խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 70 տեսակ, ՀՀ–ում՝ 6 (7)՝ գրեթե բոլոր մարզերում: Շատ տեսակներ մշակում են որպես գեղազարդիչ: Էնդեմիկ տեսակի Ֆոմին Շ. հազվագյուտ է և պահպանվում է: ՀՀ–ում աճող որոշ տեսակներ գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

ՇՆԵՅԴԵՐՈՎ Վլադիմիր Ադոլֆովիչ (1900–1973), ռուս. կինոռեժ., սցենարիստ, օպերատոր: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1955), ժող. արտիստ (1969): Ռուս. կինոյում աշխարհագր. թեմաներով ֆիլմերի («Բարձր թռիչք», 1925, «Երկու օվկիանոս», 1933) նախաձեռնողներից է: Հեռուստատես. «Կինոճանապարհորդությունների ակումբի» հիմնադիրն ու հաղորդավարը (1960–73): Նկարահանել է նաև «Ջուլբարս» (1936), «Ալամասով կիրճը» (1937) և այլ ֆիլմեր:

ՇՆԵՐ (Canis lupus f. familiaris), գայլազգիների ընտանիքի կաթնասուններ: Հավանաբար ծագել են գայլերից (կամ շնագայլից): Ընտելացվել են հավանաբար մեզոլիթում: Ընտելացման և բուծման ընթացքում ստեղծվել է 400–ից ավելի ցեղ՝ ամենուրեք: Շ–ի մասին գիտ–յունը կոչվում է *կինոլոգիա*՝ շնագիտ–յուն:

ՇՆԻՏԿԵ Ալֆրեդ Գարրիևիչ (1934–1998), գերմանացի կոմպոզիտոր: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1987): 1990–ից՝ Գերմանիայում: Հեղինակ է «Կյանքն ապուշի հետ» (1991), «Ֆեզուալդո» (1994) օպերաների, «Լաբիրինթոսներ» (1971), «Էսքիզներ» (1985), «Պեր Գյունտ» (1987) բալետների, Ռեքվիեմի (1975), «Դոկտոր Յոհան Ֆաուստի պատմությունը» (1983) և այլ կանտատների, խմբերգի (ըստ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության պոեմի), նաև սիմֆոնիաների, կամեր–գործիք. և այլ երկերի: ՌԴ Պետ. մրց. (1995):

ՇՆԻՑԼԵՐ (Schnitzler) Արթուր (1862–1931), ավստրիացի գրող: Հեղինակ է «Անատոլ» (1893) և այլ պիեսների, «Ֆրաու Բեատան ու նրա որդին» (1913) և այլ վիպակների, «Լեյտենանտ Գուստլը» (1901) և այլ նովելների, «Պրոֆեսոր Բեռնարդին» (1912) սոցիալ–քննադատ. դրամայի: Հայ. հրատարակվել են «Երկերի ժողովածուն» (1912), «Տիկին Բերտա Գաուլանը» (1984) վիպակը:

ՇՆԿՈՏԵՄ (անգլ.՝ Thlaspi), *կաղամբազգիների* ընտանիքի միամյա կամ բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 70 տեսակ, ՀՀ–ում՝ 9՝ գրեթե բոլոր մարզերում:

ՇՆՈՂ, գետ ՀՀ Լոռու մարզում, Դեբեդի աջ վտակը: Սկիզբ է առնում Գուգարաց լ–շղթայի հս. լանջերից: Երկ.՝ 20 *կմ*, ավազանը՝ 114 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 0,8 *մ*^{3}/*վ*:

«ՇՆՈՐՀԱԼԻ», ազգ., կրոն. պարբերաթերթ (1996–ից, Ժնև՝ հայ. և ֆրանս.): Տեղի Սբ Հակոբ եկեղեցու պաշտոնաթերթը:

ՇՆՈՐՀԱՎՈՏ (Avran), *խաչաձևազգիների* ընտանիքի խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 20 տեսակ՝ արևադարձների բարեխառն և ցուրտ գոտիներում ու լեռներում: Դեղատու Շ. թունավոր է. օգտագործվում է որպես լուծողական, փսխեցուցիչ և միզամուղ միջոց:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՂԲԱՐ, XIII դ–ի ճարտ., քարգործ վարպետ: *Մխիթարի* հետ 1263–ին Գոմուր գ–ում (այժմ՝ գ. Գոմք՝ ՀՀ Վայոց ձորի մարզում) կառուցել է խաչքար–մատուռ, նույն մարզի Սարտիրոս գ–ում՝ հուշարձան–խաչքար, աղբյուր և եկեղեցի (բենզորներն ու խաչքարերն օգտագործել են 1866–ին ներկայի կանգուն եռանավ բազիլիկի կառուցման համար):


ՇՆՉԱԴԻՄԱԿ, **ռեսպիրատոր** (լատ.՝ respiro – շնչել), մարդու շնչուղիները փոշուց և վնասակար նյութերից պաշտպանելու հարմարանք:

ՇՆՉԱՀԵՂՁՈՒԹՅՈՒՆ, ասֆիքսիա (հուն.՝ asphyxia – բառացի՝ անոթազարկի բացակայություն), օրգանիզմի ծանր վիճակ, որն առաջանում է թթվածնի կտրուկ անբավարարության և արյան մեջ ու հյուսվածքներում ածխաթթու գազի կուտակման հետևանքով (օր.՝ շնչառ. ուղիների արտաքինից ճնշման, մասնավորապես՝ խեղդամահության), այտուցի հետևանքով նրանց լուսանցքը փակվելու դեպքերում:

ՇՆՉԱՉԱՓ, **սպիրոմետր** (< լատ. spiro – փչել և ...*մետր*), սարք՝ առլգն խորը շնչառումից հետո առլգն արտաշնչման ժամանակ մարդու թոքերից դուրս եկող օդի ծավալի չափման համար: Գրանցող Շ. կոչվում է շնչագրիչ (**սպիրոգրաֆ**):

ՇՆՉԱՌՈՒԹՅԱՆ ՕՐԳԱՆՆԵՐ, ապահովում են օրգանիզմի և արտաքին միջավայրի միջև գազափոխանակությունը:

Շ. օ. հատուկ են կենդանի օրգանիզմներին, որոնք թթվածինն ստանում են մթն–ի օդից (թոքեր, շնչափող) կամ ջրում լուծված վիճակում (խոհիկներ):



Մարդու շնչառական համակարգը. *1. քթախոռոչ, 2. ռունգեր , 3. մակկոկորդ, 4. կոկորդ, 5. շնչափող, 6. ըմպան , 7. բրոնխներ, 8. կրծամզային խոռոչ, 9. սրտածանի, 10. թոքեր*

ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ, կենսընթացների ամբողջություն, որն ապահովում է թթվածնի ներմուծումն օրգանիզմ և ածխաթթվի հեռացումն այնտեղից, ինչպես նաև օրգ. նյութերի օքսիդացման համար բջիջների ու հյուսվածքների կողմից թթվածնի օգտագործումը՝ նրանց կենսագործունեության համար անհրաժեշտ էներգիայի անջատմամբ (այսպես կոչված՝ բջջ. կամ հյուսվածք. Շ.): Միաբջիջ կենդանիների և ցածրակարգ բույսերի օրգանիզմներում գազափոխանակությունը կատարվում է բջիջների մակերևույթի միջոցով՝ դիֆուզիայով, բարձրակարգ բույսերինը՝ նրանց մարմնի մեջ թափանցող միջբջջ. նյութերով, բազմաբջիջ կենդանիների (և մարդու) արտաքին շնչառությունն իրականանում է շնչառության հատուկ օրգաններով, իսկ հյուսվածքայինն ապահովվում է արյունով:

ՇՆՉԱՓՈՂ, **տրաքեա** (հուն.՝ tracheia – շնչափող), մարդու և ողնաշարավոր կենդանիների շնչառ. ուղիների մաս՝ տեղադրված ***կոկորդի*** և ***բրոնխների*** միջև՝ կերակրափողի առջևում: Մարդու Շ–ի երկ. 10–13 *սմ* է, տրամագիծը՝ 15–18 *մմ*: Կազմված է շարակց. կապաններով միացած աճառային կիսաօղերից:

ՇՆՉԱՓՈՂԱԲՈՐԲ, **տրախեիտ** (հուն.՝ tracheia – շնչափող), ***շնչափողի*** լորձաթաղանթի բորբոքումը՝ մրսածության և որոշ վարակիչ հիվանդությունների (գրիպ, կարմրուկ, կապույտ հազ ևն) ժամանակ: Հիմն. ախտանշանները՝ հազի նոպաներ:

ՇՆՉԱՓՈՂԱՀԱՏՈՒՄ, **տրախեոտոմիա** (< հուն.՝ tracheia – շնչափող և tome – կտրել, հատել), անհետաձգելի վիրահատություն շնչառության խանգարումների դեպքերում: Վերակենդանացման մեթոդներից է: Հայտնի է եղել դեռևս հինհռոմ. բժիշկներ Ասկլեպիադեսին և Գալենին, սակայն կիրառել են XVI դ–ից՝ շնչափողի անանցանելիության դեպքերում: Ժամանակակից բժշկության մեջ կիրառում են նաև, երբ անհետանում են շնչառ. ռեֆլեքսները, կամ խանգարվում են շնչառության մեխանիզմները:

ՇՆՉԵՂՆԵՐ, խոսքի բաղաձայն հնչյուններ, որոնք, ըստ արտաբերման տեղի ու եղանակի նույնը լինելով սովորական ***պայթականների*** հետ, տարբերվում են նրանցից հպման թուլությամբ և արտամղվող օդի առատությամբ: Հայ–ի շնչեղ խուլերն են՝ փ, թ, ք, ց, չ: Արևելահայ գր. լեզվում շնչեղները հակադրվում են խուլերին՝ կազմելով հակադր. զույգեր (օր.՝ պայտ–փայտ, տուր–թուր, կար–քար, ծեծ–ցեց, ճար–չար): Արևմտահայ գր. լեզվում և մի շարք բարբառներում, որտեղ բացակայում է խուլերի շարքը, շնչեղները հակադրվում են ձայնեղներին (բ–փ, գ–ք, դ–թ ևն):

ՇՃԻԿԱՁԵՎ ԲՋԻՋՆԵՐ, ***շճիկներ***, մարդու և կենդանիների աչքի ցանցաթաղանթի լուսազգաց բջիջներ (լուսալնկալիչներ): Ցանցաթաղանթում հաշվվում է մոտ 7 մլն շճիկ, որոնց հիմն. զանգվածը կենտր. հատվածում է և կոչվում է ***դեղին բիծ***: Շճիկները հիմնականում ապահովում են ցերեկ. տեսողությունը և մասնակցում առարկայի ձևի, գույնի և մանրամասերի ճշգրիտ ընկալմանը:


ՇՃՄԱԾՈՒԹՅՈՒՆ, գիտակցության խանգարման (մթագնման) ամենահաճախակի հանդիպող ձևերից: Կարող է առաջանալ վարակիչ հիվանդությունների, գլխուղեղի մնասվածքների, ուռուցքների, արյունազեղումների, էպիլեպսային ուշագնացության նոպայի և այլ դեպքերում: Շ. արտահայտվում է թեթև (օրնուբիլացիա) կամ ծանր (սոպոր և կոմա) ձևերով, կարող է տևել վայրկյաններից մինչև շաբաթներ, որից դուրս գալուց հետո հիվանդը հիվանդագին շրջանը չի հիշում:

ՇՈԳԳԱԶԱՏՈՒԲԲԻՆԱՅԻՆ ԿԱՅԱՆՔ, տուրբին. ջերմաուժ. կայանք, որի ջերմ. ցիկլում օգտագործում են 2 բանող մարմին՝ ջրագոլորշին և վառելանյութի այրման գազանման արգասիքները կամ միջուկ. ռեակտորում տաքացած գազը: Շ. կ. կիրառվում է, օր., ջրա–ջրային էներգ. ռեակտորներով ԱԷԿ–ում:

ՇՈԳԳԵՆԵՐԱՏՈՐ, միջուկ. ռեակտորից եկող ջերմակրի միջոցով մթն. ճնշումից բարձր ճնշումով ջր. գոլորշի ստանալու ջերմափոխանակիչ: Օգտագործում են ջրա–ջրային էներգ. ռեակտորով ԱԷԿ–ներում:

ՇՈԳԳՈՅԱՑՈՒՄ, նյութի անցումը հեղուկ կամ պինդ վիճակից գազ. վիճակի (առաջին կարգի ***ֆազային անցում***): Փակ ծավալում Շ. ընթանում է այնքան ժամանակ, մինչև հեղուկի կամ գազի մակերևույթի վրայի տարածքը լցվում է տվյալ ջերմաստիճանում հավասարակշռված ճնշում (հագեցման ճնշում) ունեցող գոլորշիով: Շ. հեղուկի ազատ մակերևույթից անվանում են գոլորշիացում, պինդ մարմնի մակերևույթից՝ ցնդում (սուբլիմում):

ՇՈԳԵՄՆԵՔԵՆԱ, ջր. գոլորշու էներգիան մեխ. աշխ–ի փոխակերպման մխոցավոր ***ջերմային շարժիչ***: Շ–ի գլանի մեջ մտնող գոլորշին տեղաշարժում է մխոցը (նկ.): Անընդհատ գործողության Շ–ի նախագիծը մշակել է Ի. Ի. ***Պոլզունովը*** (1763), իսկ որպես համապիտանի շարժիչ՝ ստեղծել է Ջ. ***Ուատտը*** (1774–84): Շ. բացառիկ նշանակություն է ունեցել արդ–յան և փոխադրամիջոցների զարգացման գործում:




Շոգեմեքենայի սխեմա. *1. մխոց, 2. շարժաթև, 3. ծնկաձև լիսեռ, 4. թափանիվ*

ՇՈԳԵՆԱՎ, շոգեմեքենայով կամ ***շոգիտուրբինով*** շարժման մեջ դրվող ինքնագնաց նավ (շոգետուրբին. Շ., սովորաբար անվանում են տուրբագնաց): Առաջին Շ.՝ «Կլերմոնտը», կառուցել է Ռ. ***Ֆուլտոնը*** 1807–ին ԱՄՆ–ում, ռուս. 1–ին «Ելիզավետան»՝ 1815–ին:

ՇՈԳԵՆԱՎԱՏՈՐՄ (ռազմ.), ***նավատորմ***, որի նավերի գլխ. շարժիչները ***շոգեմեքենաներ*** կամ ***շոգետուրբիններ*** են: 1–ին ռազմ. շոգենավը կառուցվել է ԱՄՆ–ում 1814–15–ին, Ռուսաստանում՝ 1826–ին: 1920–30–ական թթ–ին բոլոր խոշոր ռազմ. նավերի վրա, որպես գլխ. շարժիչ, տեղակայել են շոգետուրբիններ: ԵՀՊ–ից հետո խոշոր վերջրյա ռազմ. նավերը (ավիակիրներ, էսկադր. ականակիրներ) հանդերձվել են շոգեուժ. էներգ. կայանքներով:

ՇՈԳԵՏՈՒՐԲԻՆ, ջր. գոլորշու ջերմ. էներգիան մեխ. աշխ–ի փոխակերպման տուրբին: Լինում են անշարժ (օր.՝ ջէկերի) և փոխադրամիջոց. (նավ.) Շ–ներ: Պատրաստվում են միա– և բազմաիրան (սովորաբար՝ 4 իրանից ոչ ավելի), միալիսեռ (բոլոր իրանների լիսեռները մի առանցքի վրա ևն) և զուգահեռ տեղակայված 2–3 լիսեռներով Շ–ներ:



Շերեպանովների շոգեքարշը

ՇՈԳԵՔԱՐՇ, ինքնուրույն շոգեուժ. կայանքով լոկոմոտիվ: 1–ին Շ. ստեղծվել է Մեծ Բրիտանիայում 1803–ին (Ռ. Տրևիտիկ) և 1814–ին (Ջ. Ստեֆենսոն): Ռուսաստանում առաջին Շ. կառուցել են Ե. Ա. և Մ. Ե. ***Շերեպանովները*** (1833–34, տես նկ.):

ՇՈՐԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ, XII դ–ի վրացի բանաստեղծ, ***Թամարա*** թագուհու արքունիքում եղել է գանձապահ: Կյանքի վերջին տարիներն անցկացրել է Երուսաղեմի Սբ Խաչ վրաց. վանքում: «Ընձեռնավորը» («Վագրընավորը», հրտ.՝ 1712, հայ.՝ 1896) պոեմում գովերգել է Վաղ Վերածննդի հումանիստ. գաղափարները, ազատ, անկեղծ ու երկրային սերը, արծարծել եղբայրության, ընկերության ու բարեկեցության թեման: Պոեմի որոշ հատվածներ թարգմանել են Վ. Տերյանը, Հ. Միրիմանյանը և ուր., ամբողջությամբ՝ Գ. Աատուրը (1937): Հայ. հրատարակվել է նաև «Աֆորիզմներ» (2011) ժող–ը:

ՇՈԼԱՊՈՒՐ, **Սոլապուր**, ք. Հնդկաստանի Մահարաշտրա նահց–ում: Բն.՝ 951,1 հզ. (2011): Բամբակե գործվածքների արտադր–յան խոշոր կենտրոն է:

ՇՈԼԵՄ (Scholem) Գերշոմ (Գերհարդ, 1897–1982), հրեա գերմանագիր գրող: Հեղինակ է «Հրեական միստիկայի հիմնական հոսանքները» (1941), «Կաբալայի և նրա խորհրդանիշների մասին» (1960) աշխ–ների, «Վալտեր Բենիամին: Բարեկամության պատմություն» (1975) հուշագրության, նաև գրականագիտ. աշխ–ների:

ՇՈԼՈՒԽՈՎ Միխայիլ Ալեքսանդրովիչ (1905–1984), ռուս գրող: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939): Սոց. աշխ. հերոս (1967, 1980): Հեղինակ է «Խաղաղ Դոն» (հ. 1–4, 1928–40, հայ.՝ հ. 1–4, 1949–51, կինոնկար՝ 1957–58) վեպ–էպոպեայի, կոլտնտ–յան շին–յան ժամանակաշրջանին նվիրված «Հերկած խոպան» (գիրք 1–2, 1932–60,

հայ.՝ 1933, կինոնկար՝ 1959–61), ՀՄՊ-ի մասին «Նրանք մարտնչում էին հայրենիքի համար» (1969) վեպերի, «Մարդու ճակատագիրը» (1956–57, հայ.՝ 1957, կինոնկար՝ 1959) պատմվածքի, «Դոնի պատմվածքներ», «Երկնագույն տափաստան» (երկուսն էլ՝ 1926) պատմվածքների ժող-ների, նաև ակնարկների:

ԽՍՀՄ Պետ. (1941), Լենինյան (1960), Նորելյան (1965) մրց-ներ:

ՇՈԼՈԽՈՎ–ՍԻՆՅԱՎՍԿԻ (Շոլոխով) Գեորգի Ֆիլիպովիչ (1901–1967), ռուս գրող: Հեղինակ է ՀՄՊ-ի մասին «Վոլգինններ» (գիրք 1–3, 1947–51) վեպի, «Դառը մեղր» (1961–64) ինքնակենսագր. եռերգության, նաև վիպակների, պատմվածքների:

ՇՈԼՈՄ-ԱԼԵՅԽԵՄ (Sholem-Aleichem, Ռաբինովիչ Շոլոմ Նոխումովիչ, 1859–1916), հրեա գրող: 1914-ից՝ ԱՄՆ-ում: Հեղինակ է «Մենդեր Բլանկը և նրա փոքրիկ ընտանիքը» (1887), «Խոսելև-Սոխակ» (1889), «Ջրհեղեղ» (1906), «Թափառող աստղեր» (1909–11, հայ.՝ 1990), «Արյունոտ կատակ» (1913) և այլ վեպերի, «Մանուկ Մոտլը» (մաս 1, 1907, հայ.՝ 1937) և այլ վիպակների, «Հազար ու մեկ գիշերվա հեքիաթներ» (1914) պատմվածքների, «Մենախեմ-Մենդել» (1892) նովելների ժող-ների և այլ գործերի: Հայ. հրատարակվել են նաև «Երգ երգոց» (1959) վեպը, «Վիպակներ և պատմվածքներ» (1964) ժող-ը:

ՇՈԿ (ֆրանս.՝ choc), կյանքին վտանգ սպառնացող վիճակ, որն առաջանում է որպես օրգանիզմի հակազդեցություն՝ վնասվածքի, այրվածքի, վիրահատությունների, անհամատեղելի արյան փոխներարկման, ինֆարկտի ժամանակ սրտի գործունեության խանգարման և այլ դեպքերում: Բնորոշ են հարաճուն թուլությունը, զարկերակ. ճնշման կտրուկ անկումը, ԿՆՀ-ի ճնշվածությունը ևն: Անհրաժեշտ է անհետաձգելի բժշկ. օգնություն:

ՇՈԿԱԼՍԿԻ Յուլի Միխայլովիչ (1856–1940), ռուս. օվկիանոսագետ և քարտեզագիր, գեն-լեյտ. (1912): ԽՍՀՄ ԳԱ պատվ. անդամ (1939): Աշխարհագր. ընկ-յան նախագահ (1917–31): 1923–27-ին ղեկավարել է Սև ծովի ուսումնասիրության արշավախումբը, Ռուսաստանի ռելիեֆի քարտեզի ստեղծման համար գիպսաչափ. նյութերի ժող-ի կազմման աշխ-ները: Ա. Ա. Տիլոյի (1839–1899) հետ մշակել է քարտեզագր. աշխ-ների մեթոդ և այն կիրառել Ռուսաստանի ասիական մասի մակերևույթի և գլխ. գետերի երկ-յան հաշվարկման համար:

ՇՈԿԱԼՍԿՈՒ ՆԵՂՈՒՑ, Հս. սառուցյալ օվկ-ում՝ Բոլշևիկ և Հոկտ. հեղ-յան կղզիների միջև՝ Հս. Երկիր կղզեխմբում: Միացնում է Կարայան և Լապտևների ծովերը: Երկ.՝ 106 *կմ*, լայն.՝ 19–56 *մ*: Առյգն խոր.՝ նավուղում՝ 55 *մ*: Մեծ մասամբ սառցակալած է: Անվանվել է ի պատիվ Յ. *Շոկալսկու*:

«ՇՈԿԱՅԻՆ ԹԵՐԱՊԻԱ», տնտ. արմատ. բարեփոխ. եղանակ՝ շուկայական տնտեսության անցնելու ժամանակ: Իրականացվել է հիմնականում նախկին սոց. երկրներում, ինչպես նաև Լատ. Ամերիկայում, ՀՀ-ում՝ 1990-ական թթ-ին: Գլխ. տարրը գնի ազատականացումն է, որի արդյունքում առաջացել են խոշոր արժեզրկում, բնակչության կենսամակարդակի վատթարացում:

ՇՈԿԼԻ (Shockley) Ուիլյամ Բրեդֆորդ (1910–1989), ամերիկացի ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են պինդ մարմինների և կիսահաղորդիչների ֆիզիկային: Հայտնաբերել է (աշխատակից՝ Ուիլյամս հետ, 1948) *տրանզիստորը*: Նոբելյան մրց. (1956, Ջ. *Բարդինի* և Ու. *Բրատեյնի* հետ):

ՇՈԿՈԼԱԴ (գերմ.՝ Schokolade), 1. հրուշակեղեն. ստացվում է կակաոյի ունդը շաքարով մշակելով: Որոշ տեսակներ պարունակում են կաթ, ընկույզ, սուրճ ևն: Մննդ. արժեքը՝ մինչև 2,33 *ՄՋ*/100 *գ*: 2. Շ-ի փոշուց պատրաստվող ըմպելիք:

«ՇՈՂ», գր., կրթ. պարբերաթերթ (1910–13, Կ. Պոլիս): Մխիթարյան վարժարանի հրտ-յուն:

«ՇՈՂ» ՁԵԹԻ ԵՎ ՅՈՒՂԻ ԿՈՄԲԻՆԱՏ, պարեն. (ձեթ, բուս. յուղ, մարգարին) և ոչ պարեն. (լվացող միջոցներ, օճառ ևն) ապրանքներ արտադրող ձեռն. ՀՀ-ում: Հիմնադրվել է 2001-ին՝ Երևանի ձեթ-օճառի կոմբինատի (հիմն.՝ 1926) հիմքի վրա:

ՇՈՂԱԳԱՎԱՆԴ, ճարտ. համալիր ՀՀ Գեղարքունիքի մարզի Զորագյուղում: Հիմնադրել է Գեղարքունիքի իշխանուհի Մարիամը: Ամուսնու՝ իշխան Վասակ Գաբուռի հիշատակին կառուցել է Սբ Պետրոս եկեղեցին (877–886), որը կենտրոնագմբեթ, ներսից խաչաձև հորինվածք էր: Պահպանվել է հս. պատը՝ շին. արձանագրության մի հատվածով: Վանքի հս-արմ-ում թաղածածկ, արտաքուստ հնգանիստ խորանով եկեղեցու (V–VI դդ.) ավերակներն են, շուրջը՝ տապանաքարեր:

«ՇՈՂԱԿԱԹ», կրոնաբարոյական, գր., պատմաբանասիր. տարեգիրք (մինչև 1970-ը՝ հանդես, 1952–77, 1991, Ստամբուլ): Կ. Պոլսի հայոց պատրիարքության պաշտոն. հրտ-յուն: Հիմնադիր-խմբ.՝ Գարեգին Խաչատուրյան: Հետագա խմբ-ներն ի պաշտոնե եղել են Կ. Պոլսի հայոց պատրիարքները:

«ՇՈՂԱԿԱԹ», կրոնադաստիարակչ. պարբերաթերթ (1990–ից, Կոմոտինի): Արլ. Մակեդոնիայի և Թրակիայի հայ հոգևոր հովվության հրտ-յուն:

«ՇՈՂԱԿԱԹ», հայկ. հոգևոր-մշակութ. հեռուստաընկ.: Հիմնադրվել է Երևանում 1998-ին՝ արք. Գարեգին Ներսիսյանի (1999-ից՝ *Գարեգին Բ*) նախաձեռնությամբ՝ ՀԱԵ գործունեությունը լուսաբանելու և քարոզչությունն ակտիվացնելու նպատակով: 1999-ից գործում է Մայր աթոռում: Հաղորդումները հեռարձակում է ՀՀ և ԼՂՀ գրեթե ողջ տարածքում:

ՇՈՂԱԿԱԹ ՎԱՆՔ Էջմիածնի, ճարտ. համալիր Վաղարշապատի հս-ում: *Հռիփսիմյանց կույսերից* Սբ Մարիաննի՝ նահատակության վայրում կառուցվել է եկեղեցի (VII դ.)՝ 2 զույգ մույթերով գմբեթավոր դահլիճ հորինվածքով, XVII դ-ում արմ. ճակատին՝ կից սրահ, վրան՝ զանգաշտարակ: XIX դ-ում Շ. վ. եղել է մենաստան՝ շրջապատված բրգավոր պարիսպներով: Հվ. գավիթը քանդվել է 1804-ին: Եկեղեցին 1960-ին նորոգել է *Վազգեն Ա Պալճյանը*:

ՇՈՂԱԿԱՆ, բերդ Կիլիկ. Հայաստանում (ենթադրվում է՝ համանուն լեռան մոտ՝ *Կապան* բերդից ոչ հեռու): Շ-ի մոտ տեղի ունեցած ճակատամարտում (1216) Իկոնիայի սուլթանության զորքերը, շրջապատելով Կիլիկ. Հայաստանի փոքրաթիվ ուժերին, գերել են նաև *Կոստանդին* գունդստաբլին:

«ՇՈՂԱԿՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ», հոգևոր-մշակութ., լրատվ. երկշաբաթաթերթ (1996-ից, Օշական, ապա՝ Երևան): ՀԱԵ Արարատյան հայրապետ. թեմի պաշտոնաթերթ (մինչև 2000-ը՝ Արագածոտնի թեմի հրտ-յուն):

ՇՈՂԱՎԱՐԴ (Adonis), 1. մեխակազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 300 տեսակ՝ Եվրասիայի բարեխառն գոտում: Մոլախոտ է: Կան գեղազարդիչ տեսակներ: 2. Կուժկոտրուկազգիների ցեղի բույսերի տեսակ: 3. Ծաղկաբուծությունում՝ համասփյուռների ցեղի տեսակներ:

ՇՈՂԱՅՈՂ ԱՆՈՒԹՄՈՒԹՅՈՒՆ, սրտի անոիթմությունը՝ նախասրտերի և փորոքների ռիթմիկ գործունեության լրիվ կազմալուծմամբ, որը զարգանում է առավելապես երկփեղկ (միտրալ) փականի արատի, կարդիոսկլերոզի, թիրեոտոքսիկոզի դեպքերում: Հիմնականում ուղեկցվում է անկանոն անոթազարկով, հանգեցնում սրտային անբավարարության:

ՇՈՂԵՓՅԱՆ Վարդգես (Վարդ) Հարությունի (1916–1994), դրամատուրգ: Հեղինակ է «Գնացք» (1939), «Հայրենիքի դուստրը» (1942), «Մելիք-Ադամ» (1945), «Մեծ սիրտը» (1946), «Մի օր հոսպիտալում» (1952), «Մայրեր և որդիներ» (1971), «Եռապատում» (1979), «Ես քո խիղճն եմ» (1979) և այլ պիեսների:

ՇՈՂՅՈՒՆ, խեցեղենի ջնարակե մակերեսը զարդանկարելու գունանյութ, որը վերաթրծումից հետո մետաղ. կամ սադափի փայլով ի հայտ է գալիս առարկայի մակերեսին և ոսկե փայլ, շագանակագույն–ձիթապտղագույն, պղնձակարմիր, մանուշակագույն և այլ տոների շնորհիվ ուժեղացնում զարդի գեղ. էֆեկտը:

ՇՈՄԵՏ (Schaumette) Պիեռ Գասպար (1763–1794), ֆրանս. մեծ հեղ-յան գործիչ: 1792-ից՝ Փարիզի կոմունայի դատախազ: Ապաքրիստոնեացման քաղ. նախաձեռնողներից: Մեղադրվել է Փարիզի կոմունան Կոնվենտին հակադրելու փորձի մեջ: Գիլիոտինի է ենթարկվել:

ՇՈՅԻՆԿԱ (Şoyinka) Վոլե (ծ. 1934), նիգերիացի անգլիագիր գրող, լրագրող, թատեր. գործիչ: Հեղինակ է «Առյուծ և Մարգարիտ», «Անտառի պարը» (երկուսն էլ՝ 1963) պիեսների, «Մենկաբանողները» (1965) սոցիալ–քննադատ. և այլ վեպերի, «Ակե: Մանկության տարիներ» (1981) ինքնակենսագր. վիպակի, «Բանաստեղծություններ բանտից» (1969) ժող-ի, նաև էսսեների: Նոբելյան մրց. (1986):

ՇՈՆ, **Շոուն** (Shown), Թեդ (Էդվին Մայերս, 1891–1972), ամերիկացի պարող, պարուսույց: Մոդեռն պարի հիմնադիրներից: Հիմնադրել է «Դենիշոն» պարախումբն ու դպրոցը (1915, կնոջ և Ռ. Սեն-Դենի հետ), «Ջեյկոբս-Փիլլոու» (1946, Մասսաչուսեթս) ամառ. դպրոցն ու պարի փառատոնը: Հանդես է եկել նաև սեփ. պարախմբով (տղամարդկանց):

ՇՈՆԱ, բանտու խմբի ժողդ Զիմբաբվեում (8,5 մլն, 2010): Ապրում են նաև Մոզամբիկում (մոտ 460 հզ.), ՀԱՀ-ում (340 հզ.), Մալայզիայում (45 հզ.), Բոտսվանայում (50 հզ.), Զամբիայում (40 հզ.): Լեզուն՝ ծնա: Հավատացյալները քրիստոնյա են:

ՇՈՆԱ ԼԵԶՈՒՆ, Զիմբաբվեի պաշտոն. լեզուներից: Պատկանում է բենուե–կոնգոլեզյան լեզուների բանտու լեզվախմբին: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՇՈՆԻՆ Գեորգի Ստեպանովիչ (1935–1997), ռուս տիեզերագնաց օդաչու (1969): Ավիացիայի գեն-լեյտ. (1985): ԽՄ հերոս


(1969)։ Թռել է «Սոյուզ-6» տիեզերանավով (1969-ի հոկտ.)։

ՇՈՇ, Շուշ (Էլամ.՝ Šušan, աքքադ.՝ Šusim, պարսկ.՝ Shouch), հնագույն ք. Իրանում (մ. թ. ա. IV հզ–ամյակ–մ. թ. X դ.)։ Մ. թ. ա. III հզ–ամյակի 2-րդ կես–I հզ–ամյակի 1-ին կեսին՝ Էլամի վարչ. և մշակույթի գլխ կենտրոնը։ Հայտնաբերվել են պարսպապատ երկրագործ. բնակավայրի մնացորդներ, զարդանկարներով խեցեղեն, քարե և պղնձե առարկաներ, կնիքներ, գործիքներ, ոսկե զարդեր, սեպագիր արձանագրություններ ևն։

ՇՈՇԱՓԵԼԻՔԻ ՕՐԳԱՆՆԵՐ, մաշկում, տեղաշարժ. ապարատում (մկաններ, ջլեր, հոդեր) և որոշ օրգանների լորձաթաղանթներում (լեզու, շրթունքներ) տեղադրված հատուկ ընդունիչներ, որոնց միջոցով օրգանիզմն ընկալում է շրջապատող միջավայրի մեխ., ջերմ., ցավային գործոնների համալիր ազդեցությունը։ Մարդու օրգանիզմում Շ. օ–ով առանձնապես հարուստ են շրթունքները, մատները, ափերը, ոտքերի ներբանները։

ՇՈՇԱՓՈՂ ԱՐԱԳԱՑՈՒՄ, **տանգենցիալ արագացում**, կորագիծ շարժվող *նյութական կետի* արագացման բաղադրիչը, որն ուղղված է հետագծի շոշափողով։ Բնութագրում է արագության վեկտորի փոփոխության արագությունը՝ ըստ մեծության։

ՇՈՇԱՓՈՂ ՈՒԺԻ L կորի M կետում, սահման. դիրք (նկ-ում՝ MT), որին ձգտում է MM′ հատողը, երբ M′ կետը մոտենում է M կետին։



ՇՈՇԱՓՈՒԿՆԵՐ, ծով. և քաղցրահամ ջրերի անողնաշարների տիպ։ Բերան. բացվածքը շրջապատված է *շոշափուկներով*։ Նստակյաց կյանք են վարում։ Դասերը՝ ֆորոնիդներ, ուստանիներ և, հավանաբար, կամպտոզոներ։

ՇՈՇԱՓՈՒԿՆԵՐ, բազմաթիվ անողնաշարների մարմնի շարժուն ելուստներ։ Ծառայում են սնունդը բռնելու, շնչառության, շոշափելիքի, հոտառության և շարժողության (փափկամարմինների) համար։

ՇՈՇԱՓՈՒՄ, **պալպացիա** (լատ.՝ palpatio), հիվանդի բժշկ. հետազոտության եղանակ, մակերևութ. հյուսվածքների և խորը տեղադրված օրգանների հաջորդ. շոշափումը, որով որոշում են մաշկածածկույթի ջերմաստիճանն ու խոնավությունը, որոշ ներքին օրգանների չափերը, դիրքը, մակերևույթի բնութագիրը և համակազմվածքը, նաև հիվանդի հակազդեցությունը Շ–մանը (օր.՝ ցավի զգացողություն)։

ՇՈՇՈՆՆԵՐ (ինքնանվանումը՝ նիմիներ), հնդկաց. ժողղ–ների խումբ Արմ. Ամերիկայում։ Ընդհ. թվաքանակը՝ 7,7 հզ. (2000)։ Գիրը՝ լատինատառ։ Հավատացյալները քրիստոնյա են։

ՇՈՊԵՆ (Chopin) Իվան Իվանովիչ (1798–1870), ֆրանսիացի ազգագրագետ, պատմաբան։ 1825-ից՝ Ռուսաստանում։ Եղել է *Հայկական մարզի* եկամուտների և պետ. տուրքի վարչության պետ։ Կատարել է վիճակագր. հետազոտություններ։ Նրա «Պատմական հուշարձան Հայկական մարզի կացության մասին՝ այն Ռուսական կայսրությանը միացնելու ժամանակաշրջանում» (ռուս., 1852) աշխ–ը 1840-ին (ձեռագիր) արժանացել է ՌԳԱ Դեմիդովյան մրց–ի։

ՇՈՊԵՆ Ֆրիդերիկ (1810–1849), լեհ կոմպոզիտոր, դաշնակահար։ 1831-ից՝ Փարիզում։ Լեհ. դաս. երաժշտության, արդի դաշնամուր. դպրոցի և դաշնամուր. բալլադի հիմնադիրը։ Կատարող. արվ–ին բնորոշ է զգայական խորությունը, կատարյալ և նրբագեղ տեխնիկան։ Հեղինակ է կոնցերտների (1829, 1830), սոնատների (1828–44), ֆանտազիայի (1841), բալլադների (1835–42), սկերցոների (1832–42), նոկտյուռնների, էտյուդների, երգերի և այլ գործերի։ 1927-ից Վարշավայում անցկացվում է դաշնակահարների Շ–ի անվ. միջազգ. մրցույթ։

ՇՈՊԵՆՀԱՈՒԵՐ (Schopenhauer) Արթուր (1788–1860), գերմանացի փիլ.։ «Աշխարհը որպես կամք ու պատկերացում» (հ. 1, 2, 1819, 1844) հիմն. աշխ–յան մեջ աշխարհի էությունը (Ի. Կանտի «ինքնին իրը») ներկայացնում է որպես ոչ բանական կամք, կյանքի հանդեպ կույր և աննպատակ մղում։ Ըստ Շ–ի՝ աշխարհից «ազատագրումը» կարելի է կարեկցանքի, անաչառ գեղ. հայեցողության և ասկետիզմի միջոցով, որին հասնում են նիրվանային մոտ վիճակում։ Շ–ի փիլ–յունը Եվրոպայում տարածվել է XIX դ–ի 2-րդ կեսին։

ՇՈՌԼԵՄՄԵՐ (Schorlemmer) Կառլ (1834–1892), գերմանացի քիմիկոս–օրգանիկ։ Աշխ–ները վերաբերում են հագեցած ածխաջրածինների քիմիային, օրգ. քիմիայի պատմությանը։ Հաստատել է (1868), որ ածխածնի 4 արժեքականությունները համարժեք են։

ՇՈՒՆԹԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (այժմ՝ Նախիջևանի ԻՀ Ձուլֆայի շրջանում), գործել է գլխավորապես XVII–XVIII դդ–ում։ «Կուսանաց անապատի» գրչության գործունեությունն աշխուժացել է XVII դ–ում։ Կուսանոցի գեղագիր գրչուհի Մարգարիտի՝ 1648–73-ին ստեղծած 5 ձեռագիր պահվում է Մտնդ–ում։ Ձեռագրեր են ընդօրինակել նաև Շուշան, Գոհար, Մարիամ կույսերը, Հովհաննես, Բագրատ, Թադևոս, Մինաս, Մարգար և այլ գրիչներ։ XVII դ–ում Շ. գ. կ–ում ստեղծված մատյաններից շուրջ 35-ը պահվում են Մտնդ–ում։

ՇՈՒՆԹԻ ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ, ճարտ. հուշարձան Սյունիք նահ–ի Երնջակ գվդ–ի Շոռոթ գ–ում (այժմ՝ Նախիջևանի ԻՀ Ձուլֆայի շրջանում)։ Հիշատակվում է XIII դ–ից։ Ներկայի եկեղեցին (ըստ շին. արձանագրության) կառուցվել է 1642-ին, գմբեթը վերակառուցվել է 1704-ին։ XX դ–ի սկզբին կանգնեցվել է փոքր զանգակատուն։ Եկեղեցին խաչաձև մույթերով գմբեթավոր խոշոր բազիլիկ է՝ կից եռակամար գավիթ–սրահով (ավերվել է 1840-ի երկրաշարժից)։

ՇՈՍՍՈՆ (Chausson) Էռնեստ (1855–1899), ֆրանսիացի կոմպոզիտոր։ Հեղինակ է «Պոեմի» ջութակի և նվագախմբի համար (1896), «Արթուս արքա» (բեմ.՝ 1903) օպերայի, սիմֆ. երկերի, «Սիրո և ծովի պոեմի» ձայնի և նվագախմբի համար (1892), ռոմանսների և այլ գործերի։

ՇՈՍՏԱԿ (Szostak) Ձեկ (ծ. 1952), ամերիկացի բջջագենետիկ։ Հետազոտել է ԴՆԹ–քրոմոսոմի ծայրային հատվածների (թելոմեր) բնույթը, հաստատել (Է. *Բլեկբեռնի* հետ) դրանք պաշտպանող ԴՆԹ–ի առանձնահատուկ հաջորդականությունները (խմորասնկերի օրինակով), թելոմերազի դերը բջջ. կիսման կենսընթացում։

Նոբելյան մրց. (2009, Է. Բլեկբեռնի և Ք. *Գրեյդերի* հետ)։

ՇՈՍՏԱԿՈՎԻՉ Դմիտրի Դմիտրևիչ (1906–1975), ռուս կոմպոզիտոր, դաշնակահար։ ԽՍՀՄ ժող. արտիստ (1954)։ Սոց. աշխ. հերոս (1966)։ XX դ–ի համաշխ. երաժշտ. մշակույթի դասականներից։ Հեղինակ է «Քիթը» (1928), «Մցենսկի գավառի Լեդի Մակբեթը» (1932, 2-րդ խմբագրությունը՝ «Կատերինա Իզմայլովա», 1962) օպերաների, «Ոսկեդարը» (1930), «Երկաթե նիգ» (1931), «Առվակի խոխոջը» (1935) բալետների, նաև սիմֆոնիաների (1925–71), լար. կվարտետների (1938–74), դաշնամուր. տրիոյի (1974), գործիք. սոնատների, «Մոսկվա–Չերյոմուշկի» (1959) օպերետի, թատրոնի և կինոյի երաժշտության են։

ԽՍՀՄ (1941, 1942, 1946, 1950, 1952, 1968), ՌԽՖՍՀ (1974) Պետ., Լենինյան (1958) մրց–ներ։

ՇՈՍՏԱԿՈՎՄԿԻ Միխայիլ Ֆեոդորովիչ (1905–1983), ռուս. քիմիկոս–օրգանիկ։ ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1960)։ Աշխ–ները վերաբերում են վինիլային էսթերների և դրանց պոլիմերների քիմիային։ Առաջարկել է բուժիչ բալասան (վինիլին՝ Շ–ու բալասան)։ ԽՍՀՄ Պետ. մրց. (1949)։

ՇՈՎԻՆԻԶՄ [ֆրանս.՝ chauvinisme, Նապոլեոն I–ի նվաճող. քաղ–յան կողմնակից գինվոր Ն. Շովինի (Chauvin) անունից], ծայրահեղ ագրեսիվ ազգայնամոլության ձև։

ՇՈՎԻՐԵ (Chauviré) Իվետ (1917–2016), բալետի ֆրանսիացի արտիստուհի։ 1935–72-ին՝ Փարիզի ազգ. օպերայի մենապարուհի (Ժիզել՝ Ա. Ադանի «Ժիզել», Ջուլիետ՝ ըստ Պ. Ի. Չայկովսկու «Ռոմեո և Ջուլիետ», ևն), 1963–72-ին՝ Փարիզի օպեր. դպրոցի տնօրեն։

ՇՈՏ (Schott) Ֆրիդրիխ Օտտո (1851–1935), գերմանացի քիմիկոս։ Ապակու ժամանակակից արտադր–յան հիմնադիրը, ստեղծել է հատուկ ապակիների տեսակներ։ 1884-ին հիմնադրել է ապակու ձեռն. Իենա ք–ում, որը ցայսօր հայտնի է իր բարձրորակ ապակիներով։

«ՇՈՏ», **«Շոտ և որդիներ»** («Schott», «B. Schott's Söhne»), գերմ. երաժշտ. հրտչ–յուն։ Հիմնադրել է Բ. Շոտը 1770-ին Մայնցում։ Մեծ ճանաչում է ձեռք բերել 1824-ին Լ. վան *Բեթհովենի* վերջին ստեղծագործությունների հրատարակումով։ Աշխարհի ամենախոշոր երաժշտ. հրտչ–յուններից է, ունի մասնաճյուղեր մի շարք երկրներում։

ՇՈՏԱՆ (Chautemps) Կամիլ (1885–1963), ֆրանսիացի քաղ. գործիչ, իրավաբան։ Ֆրանսիայի վարչապետ՝ 1930, 1933–34 և 1937–1938-ին։ Նպաստել է Ազգ. ճակատի տրոհմանը։

ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ՏԵՐԻԵՐ (Scottish terrier), **սկոտչտերիեր**, *տերիերների* խմբի շնեբի ցեղ։ Կարճլիկ, ամրակազմ, ցցված ականջներով, երկար, կոշտ, չթրջվող մորթիով և կարճ, ուղղաձիգ պոչով կենդանի է։ Պահում են որպես ընկերակից շներ։

ՇՈՏԼԱՆԴԱԶԻՆԵՐ, ժողղ, Շոտլանդիայի և հարակից կղզիների հիմն. բնակչությունը (5,2 մլն, 2010)։ Շ–ի ժառանգները ներառվել են ԱՄՆ–ի ամերիկացիների (3,1 մլն, 2000), կանադացիների (568,5 հզ., 2006), անգլո–ավստրալացիների (1,5 մլն, 2006) ևնի կազմերում։ Բաժանվում են լոուլենդներ և հայլենդներ խմբերի, որոնք խոսում են անգլ–ով և հայլերենով։ Հավատացյալները երիցական են։

ՇՈՏԼԱՆԴԵՐԵՆ, **սկովտերեն**, *շոտլանդացիների* լեզուն, անգլ–ի մի տարբերակը Շոտլանդիայում։ Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի կելտ. ճյուղի գելյան խմբին։

ՇՈՏԼԱՆԴԻԱ (Scotland), Մեծ Բրիտանիայի վարչաքաղ. մաս: Զբաղեցնում է Մեծ Բրիտանիա կղզու հս. մասը և հարակից կղզիները: Ունի մասնակի ինքնավարության իրավունք: Տարածքը՝ 78,8 հզ. *կմ*^{2}, բն.՝ 5,2 մլն (2010), հիմնականում՝ շոտլանդացիներ (88,1 %), նաև անգլիացիներ (7,4 %), իռլանդացիներ (1 %), հնդկա–պակիստանցիներ (1 %) (2001) ևն: Բաժանված է 9 շրջանի և 3 կղզային տարածքների: Գլխ. ք–ը՝ ***Էդինբուրգ***: Շ–ի տարածքում հնում բնակություն են հաստատել պիկետները և գելերը, V–VI դդ–ում՝ սքոթները (այստեղից՝ Շ. անվանումը, բառացի՝ սքոթների երկիր): XI դ–ում ձևավորվել է շոտլանդ. թագավորությունը: XIII դ–ի վերջից Անգլիան քանիցս փորձել է իրեն ենթարկել Շ., բայց հանդիպել է շոտլանդացիների դիմադրությանը (1314–ին նրանք ջախջախել են անգլ. բանակը): Ռեֆորմացիայի ընթացքում (XVI դ–ի կեսին) ստեղծվել է երիցական եկեղեցին: 1603–ին անգլ. գահին *Սթյուարտների* շոտլանդ. հարստության հաստատումով Շ. անձնական ունիայով միացել է Անգլիային: 1651–52–ին Շ. ամբողջությամբ միավորվել է Անգլիային (պաշտոն. միավորումը՝ 1707–ին): 2014–ի հանրաքվեով Շ–ի բնակչությունը մերժել է անկախացումը Մեծ Բրիտանիայից:

ՇՈՏԿԻ (Shottky) Վալտեր (1886–1976), գերմանացի ֆիզիկոս: Հիմնարար ներդրում է կատարել էմիսիոն (առաքումային) էլեկտրոնիկայի ֆիզ. հիմունքների մշակման գործում (հայտնաբերել է տրիոդը, բացահայտել էմիսիոն հոսքի կախվածությունն արագացնող էլ. դաշտից Շոտկիի էֆեկտը, առաջարկել ուժեղացման գերհետերոդինային սկզբունքը) և կիսահաղորդիչների ֆիզիկայում (առաջարկել է հաղորդականության մեխանիզմ, հետազոտել մետաղ–կիսահաղորդիչ պատնեշը՝ ***Շոտկիի պատնեշ***, և 1838–39–ին ստեղծել կիսահաղորդչ. դիոդի՝ ***Շոտկիի դիոդի*** տեսությունը):

ՇՈՏԿԻԻ ԴԻՈԴ, կիսահաղորդչ. դիոդ, որի գործողությունը հիմնված է մետաղի հետ կիսահաղորդչի հպում. հատկությունների օգտագործման վրա: Կոչվել է Վ. ***Շոտկիի*** անունով: Օգտագործվում է մինչև 50 *ԳՀց* հաճախություններով էլ. ազդանշանների փոխակերպման համար և որպես գերարագ գործող փոխակերպիչ:

ՇՈՏԿԻԻ ՊԱՏՆԵՇ, պոտենցիալ պատնեշ, որն առաջանում է կիսահաղորդչի՝ մետաղի հետ հպման շերտում: Առաջացման համար անհրաժեշտ է, որպեսզի էլեկտրոնների ելքի աշխ–ները մետաղից և կիսահաղորդչից իրարից տարբերվեն: Հետազոտել է Վ. *Շոտկին* 1939–ին:

ՇՈՐԵՐԵՆ, թյուրք. լեզվաընտանիքի ույղուր. խմբի լեզու: Գրի հիմքում ռուս. այբուբենն է:

ՇՈՐԹ (Short) Զեյմս (1710–1768), անգլիացի աստղագետ և օպտիկ: Ստեղծել է մոտ 1400 բարձրորակ հայելային աստղադիտակներ, հայտնագործել ճշգրիտ ճոճանակային ժամացույցը:

ՇՈՐԹ ՏՐԵԿ (անգլ.՝ short track – բառացի՝ կարճ մրցուղի), չմշկավազքի տարատեսակ. վազք չմուշկներով կարճ մրցուղով, որը, որպես կանոն, գծված է հոկեյի դաշտում: Առաջացել է Կանադայում XX դ–ի սկզբին: Շ. տ–ի տեխ. կոմիտեն Չմշկորդների միջազգ. միության անդամ է (1957–ից): Աշխարհի առաջնությունները՝ 1981–ից: Զմեռ. օլիմպ. խաղերի ծրագրում է 1992–ից:

ՇՈՐԹՀՈՐՆ (shorthorn), կարճաեղջյուր տավարի ցեղ: Ստացվել է XVIII դ–ում Մեծ Բրիտանիայում: Յուլերի կ. գ.՝ 800–900 (երբեմն՝ 1200) *կգ*, կովերինը՝ 500–600 (մինչև՝ 700) *կգ*, 16–18 ամսական ամրոցված ցուլիկներինը (մսատու)՝ 450–460 *կգ*: Տարեկան միջին կաթնատվությունը (կաթնամսատու ուղղության)՝ 3500–4000 *կգ* (առլզն՝ 14 հզ. *կգ*), կաթի յուղայնությունը՝ 3,7–3,9 %:

ՇՈՐԹՈՒՄ (քր. իրավունքում), անձի կամ նրա մերձավորի մասին արատավորող կամ նրանց իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու, նրանց նկատմամբ բռնություն գործադրելու կամ գույքը ոչնչացնելու (վնասելու) սպառնալիքով գույքին վերաբերող գործողություններ կատարելու պահանջը:

ՇՈՐԺԱՅԻ ՔՐՈՄԻՏԻ ՀԱՆՔԱՎԱՅՐ, Գեղարքունիքի մարզում՝ Սևանա լճի արլ. ափին՝ Շորժա գ–ից 1,5 *կմ* արլ.: Հայտնաբերվել է 1889–ին: Կազմված է քրոմշպինելիդներ, սերպենտին (անտիգորիտ, քրիզոտիլ), երբեմն՝ ձիթակն միներալներից: Հազվադեպ հանդիպում են նաև քրոմնռնաքարեր, կալցիտ, պենտլանդիտ, միլարիտ, երբեմն՝ բնածին պղինձ: Cr_2O_3–ի (40 % միջին պարունակությամբ) մոտ 12 հզ. *տ* հանքանյութի մի մասը 1942–51–ին արդյունահանվել է:

ՇՈՐԻ ՄԵԹՈԴ, մետաղների կարծրության որոշման մեթոդ՝ ալմաստե ծայրապանակով թեթև զարկանի՝ փորձարկվող նմուշից հետ ցատկելու բարձր–յան չափման միջոցով (1920–ական թթ.): Առաջարկել է ամերիկացի արդյունաբերող Ա. ֆոն Շորը:

ՇՈՐԻԳԻՆ Պյոտր Պավլովիչ (1911–2009), ռուս ֆիզքիմիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1981): Աշխ–ները վերաբերում են մոլ. սպեկտրադիտության և ֆիզ. օրգ. քիմիայի բնագավառներին: Բացահայտել է (1952) լույսի ռեզոնանս. կոմբինացիոն ցրումը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1979):

ՇՈՐԻՆ Ալեքսանդր Ֆեոդորովիչ (1890–1941), ռուս. գյուտարար: Տառատիպ հեռագր. ապարատի (1928), ինչյուն. կինոյի լուսանկարչ. ձայնագրման համակարգի (1928) և ձայնի մեխ. ձայնագրման ու վերարտադրման եղանակի (1932–34) հեղինակը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941):

ՇՈՐԻՆ Վլադիմիր Պավլովիչ (ծ. 1939), ռուս. ջերմաէներգետիկ: ՌԳԱ ակադ. (1991): Աշխ–ները վերաբերում են էներգ. տեղակայանքներում, մասնավորապես՝ թռչող սարքերի շարժիչներում աշխ. շարժընթացների դինամիկային: ՌԴ Պետ. (1992), Կառ–յան (1999) մրց–ներ:

ՇՈՐՇՈՐՈՎ Մինաս Խաչատուրի (1922–2005), մետաղագետ և մետաղների ֆիզիկոս: Տեխ. գիտ. դ–ր (1964), պրոֆ. (1968): Լոնդոնի թագավոր. ընկ–յան անդամ (1980–ից): ՌԴ գիտ. վաստ. գործիչ (1992): Աշխ–ները վերաբերում են մետաղների ու մետաղ. մատրիցաներով բաղադրանյութերի գերառաձգականությանը, մետաղ. համաձուլվածքներում ֆազ. փոխակերպումներին և ջերմամեխ. ամրացմանը, պաշտպ. պատվածքների փոշեմետաղագիտ–յանը: ԽՍՀՄ–ում առաջինն է կազմակերպել բաղադրյալ նյութերի կիսապատրաստուկների փորձն. արտադր–յուն:

ԽՍՀՄ Պետ. (1984), ՌԳԱ Պ. Պ. Անոսովի անվ. (1966) և այլ մրց–ներ, Աշխ. կարմիր դրոշի շքանշան (1981):

ՇՈՐՈՐ, **ճոճ**, **ճոշկ**, հայկ. ժող. պարաձև: Քայլերը կազմվում են մարմնի ծանրությունը ոտքից ոտք տեղափոխելու՝ շորորաձև շարժումների միջոցով: Հնում կատարվել են նախնիների հիշատակության արարողությունների ժամանակ: Տարածված է ՀՀ գրեթե բոլոր մարզերում: Չափը՝ հիմնականում 6/8:

ՇՈՈՒ (Shaw) Իրվին (1913–1984), ամերիկացի գրող: Հեղինակ է ԵՀՊ–ի մասին «Երիտասարդ առյուծներ» (1948) վեպի, «Հարուստը, աղքատը» (1970) և «Աղքատը, գողը» (1977) երկերգության, «Երեկոն Բյուզանդիայում» (1973), «Կորստի հիշողություն» (1982) վեպերի, նաև դրամանեքի, պատմվածքների:

ՇՈՈՒ Ջորջ Բեռնարդ (1856–1950), իռլանդացի անգլիագիր դրամատուրգ: 1876–ին տեղափոխվել է Լոնդոն: Ստեղծել է բանավիճ. դրաման, որի կենտրոնում հակոտնյա գաղափարախոսությունների բախումն է: Շ–ի ստեղծագործ. մեթոդում գերիշխողը պարադոքսն է: Հեղինակ է «Տիաճ պիեսներ», «Հաճելի պիեսներ» (երկուսն էլ՝ 1898), «Երեք պիես՝ պուրիտանների համար» (1901) ժող–ների, «Սիրող սոցիալիստը» (1883) վեպի, «Բժշկի երկընտրանք» (1906), դոգմատիկ քրիստոնեությունը քննադատող «Անդրոկլեսն ու առյուծը» (1913) պիեսների, «Ամուսնություն» (1908), «Մեզալյանս» (1910) և դրամատիկ. այլ գործերի, «Պիգմալիոն» (1913) կատակերգության, «Հետդեպի Սահֆուսաիլը» (1918–20), «Խնձորով լի սայլակը» (1929), «Բարի Կառլոս թագավորի երջանիկ օրերին» (1939), «Միլիոնատիրուհին» (1936) և այլ պիեսների, «Սուրբ Իոհաննան» (1923) ողբերգության: «Մարդը և գերմարդը» (1901–03), «Ջոն Բուլի մյուս կղզին» (1904) պիեսներում առաջադրել է հաս. և անձն. բարոյականության սուր խնդիրներ: Նոբելյան մրց. (1925):

ՇՈՈՒ Ռիչարդ Նորման (1831–1912), անգլիացի ճարտ.: Կառուցել է նորգոթ. ոճի եկեղեցի (Բոլոր սրբերին, Լիկա, 1885–87), «հինանգլիական» ոճի արվարձան. տներ, էկլեկտիկ ոճի «Նոր Սքոթլանդ Յարդ» ոստիկան. շտաբ–բնակարանը Լոնդոնում (1887–90, 1901–07):

ՇՉԱՆ ԲԱՏ, ***բադերի*** ընտանիքի ջրլող թռչուն: Երկ.՝ մինչև 50 *սմ*: Տարածված է Եվրասիայի լճերում, անտառներում և տունդրաներում: Որսի թռչուն է:

ՇՉԵԳԼՅԱԵՎ Անդրեյ Վլադիմիրովիչ (1902–1970), ջերմատեխնիկ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1953): Աշխ–ները վերաբերում են շոգետուրբիններին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1948, 1952):

ՇՉԵԳԼՈՎԻՏՈՎ Իվան Գրիգորևիչ (1861–1918), ռուս. իրավագետ: 1906–15–ին՝ Ռուսաստանի արդարադատության նախարար, Ռուս. կայսրության Պետ. խորհրդի վերջին նախագահը (1917): Ռազմաղաշտ. դատարանների ստեղծման նախաձեռնողը: Աշխ–ները վերաբերում են քր. իրավունքին և քրեագիտ–յանը: Գնդակահարվել է:

ՇՉԵԴՐԻՆ Ռոդիոն Կոնստանտինովիչ (ծ. 1932), ռուս. կոմպոզիտոր, դաշնակահար, հաս. գործիչ: ԽՍՀՄ ժող. արտիստ (1981): Մ. Մ. ***Պլիսեցկայայի*** ամուսինը: Գրել է «Ոչ միայն սեր» (1961), «Մեռած հոգիներ» (1977) օպերաները, «Սապատավոր ձիուկը» (1960), «Կարմեն–սյուիտ» (1967, ըստ՝ Ժ. Բիզեի օպերայի), «Աննա Կարենինա»

(1972), «Ճայը» (1979), «Շնիկով տիկինը» (1985) բալետները, «Պոետորիա» (Ա. Ա. Վոզնեսենսկու խոսքերով, 1968), սիմֆոնիաներ (1958, 1965), նվագախմբային կոնցերտներ («Չարաճճի չաստուշկաներ», 1963, «Ղողանջներ», 1968, «Ինքնադիմանկար», 1984, ևն), կամեր-գործիք. և այլ գործեր: Հյուրախաղերով հանդես է եկել Երևանում:

ԽՍՀՄ (1972), ՌԴ (1992) Պետ., Լենինյան (1984) մրց-ներ:

ՇՉԵԴՐԻՆ Սիլվեստր Ֆեոդոսիևիչ (1791–1830), ռուս. գեղանկարիչ: Ռուս. ռեալիստ. բնանկարչության հիմնադիրներից: Ֆ. Ֆ. *Շչեդրինի* որդին: 1918–ից՝ Իտալիայում: Ստեղծել է ռոմանտիկ., բանաստեղծ. բնանկարներ («Նավահանգիստներ Սորենտոյում», շարք, 1825–28, ևն): Ռուս. բնանկարչության մեջ առաջինն է անդրադարձել պլեներին: Շ–ի «Հռոմի Սուրբ հրեշտակի դղյակի տեսարանը» նկարը ՀԱՊ–ում է:

ՇՉԵԴՐԻՆ Ֆեոդոսի Ֆեոդորովիչ (1751–1825), ռուս. քանդ.: Ս. Ֆ. *Շչեդրինի* հայրը: Հեղինակ է քաղաքաց. պաթոսով տոգորված մոնումենտալ կոմպոզիցիաների (Ս. Պետերբուրգի Ծովակալության շենքի քանդակ. հարդարանքը, 1812–13), դից. արձանների («Վեներա», 1792, ևն), դիմաքանդակների:

ՇՉԵՊԿԻՆ Միխայիլ Սեմյոնովիչ (1788–1863), ռուս դերասան: Ռուս. թատրոնի բարեփոխիչ. ներդրել է բեմ. ռեալիզմի ավանդույթները, մշակել վերամարմնավորման սկզբունքները: Մինչև 1822–ը եղել է ճորտ, 1823–ից՝ Մոսկվայի թատրոնի (1824–ից՝ Փոքր թատրոն) դերասան (Ֆամուսով՝ Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս», Քաղաքագլուխ՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», Սուրոմսկի՝ Վ. Ա. Սուխովո-Կոբիլինի «Կրեչինսկու հարսանիքը», Կուզովկին՝ Ի. Ս. Տուրգենևի «Ձրիակյացը», ևն):

ՇՉԵՐԲԱԿՈՎ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (1925–2013), ԽՍՀՄ վաստ. փորձարկող օդաչու (1967), գնդ.: ԽՄ հերոս (1971): Տեխ. գիտ. թեկնածու (1986): Ա. Ս. *Շչերբակովի* որդին: Փորձարկել է գերձայն. կործանիչները պտտաէջքում:

ՇՉԵՐԲԱԿՈՎ Ալեքսանդր Սերգեևիչ (1901–1945), ռուս ռազմ. գործիչ, գեն–գնդ. (1943): Ա. Ա. *Շչերբակովի* հայրը: 1938–45–ին՝ ՀամԿ(բ)Կ Մոսկվայի մարզկոմի 1–ին քարտուղար, միաժամանակ, 1941–ից՝ ՀամԿ(բ)Կ ԿԿ քարտուղար և Խորհրդ. տեղեկատվ. բյուրոյի պետ, 1942–ից՝ Խորհրդ. բանակի գլխ. քաղվարչության և պաշտպյան ժողկոմի տեղակալ:

ՇՉԵՐԲԱԿՈՎ Բորիս Վասիլևիչ (ծ. 1949), ռուս. դերասան: ՌԴ ժող. արտիստ (1994): 1972–ից՝ ՄԳԱԹ–ի դերասան: Նկարահանվել է կինոյում («Սիրելիներից մի՛ բաժանվեք», «Ափ», «Վալենտին և Վալենտինա» «Քրեական քառյակը», «Օրենքով գողերը», «Անպատվության կողեքսը», «Խելքը թոցնե՛լ» ևն): Նկարահանել է «Մակրավորներ» (2007, որդու՝ Վ. Շչերբակովի հետ) ֆիլմը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1985):

ՇՉԵՐԲԱՏՈՎ Միխայիլ Միխայլովիչ (1733–1790), ռուս. իշխան, պատմաբան, հրապարակախոս: Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. (1776/77), ՌԳԱ պատվ. (1783) անդամ: Սենատոր (1779): Հեղինակ է «Ռուսաստանի պատմությունը հնագույն ժամանակներից» (հ. 1–7, 1770–91), «Համառոտ պատմություն Ռուսաստանում նախկին ինքնակոչների մասին» (1774), «Զրույցներ հոգու անմահության մասին» (1788) և այլ աշխ-ների:

ՇՉԵՐԲԱՏՍԿՈՅ Ֆեոդոր Իպոլիտովիչ (1866–1942), ռուս. արևելագետ, հնդկագետ և տիբեթագետ: ՌԳԱ (1918), ԽՍՀՄ ԳԱ (1925) ակադ.: Աշխ-ները վերաբերում են Հվ–արլ. Ասիայի պատմությանը և մշակույթին: Հեղինակ է «Իմացության տեսությունն ու տրամաբանությունը՝ ըստ ուշ շրջանի բուդդայականների ուսմունքի» (մաս 1, 2, 1903, 1909) և այլ երկերի:

ՇՉԵՐԲԻՑԿԻ Վլադիմիր Վասիլևիչ (1918–1990), խորհրդ. կուս. և պետ. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1974, 1977): 1957–61–ին՝ Ուկր. ԽՍՀ կոմկուսի ԿԿ քարտուղար, 1961–63 և 1965–72–ին՝ Ուկր. ԽՍՀ ՆԽ նախագահ: 1971–89–ին՝ ԽՄԿԿ ԿԿ քաղբյուրոյի անդամ: 1972–89–ին՝ Ուկր. ԽՍՀ կոմկուսի ԿԿ 1–ին քարտուղար: Լենինյան մրց. (1982):

ՇՉԵՐԲՈ Վիտալի Բենեդիկտովիչ (ծ. 1972), բելառուս մարզիկ (սպորտ. մարմնամարզություն): ԽՍՀՄ ս. վ. վ. (1972): Օլիմպ. խաղերի 6–ակի (1972) չեմպիոն՝ անհատ. և թիմ. հաշվարկում, աշխարհի բազմակի (1991–96), առանձին ձևերի (1993, 1994), Եվրոպայի (1994, 1995), աշխարհի բացարձակ (1993, 1995) չեմպիոն:

ՇՉԵՅԻՆ, ք. Լեհաստանի հս–արլ–ում, Արմ. Պոմերանիա (նախկին Շչեցինի) վոյեվոդության վարչ. կենտրոնը: Բն.՝ 401 հզ. (2010): Խոշոր նվինգստ՝ Օդրայի ափին: Ունի օդանավակայան: Կան նավաշինության, մետաղագործության, սննդի, քիմ. դեղագործ. արդ–յուն: Հիմնադրվել է IX դ–ում:

ՇՉՅՈԳՈԼԵՎ Վյաչեսլավ Իվանովիչ (ծ. 1940), ռուս. մարզիկ (միջազգ. շաշկի): Միջազգ. գրոսմայստեր (1960), ԽՍՀՄ ս. վ. վ. (1964): Աշխարհի (1960–61, 1964–65), ԽՍՀՄ (1959, 1963–64, 1976) բազմակի չեմպիոն:

ՇՉՅՈԼԿԻՆ Կիրիլ Իվանովիչ (1911–1968), ռուս. ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1953): Սոց. աշխ. հերոս (1949, 1951, 1954): Աշխ-ները վերաբերում են այրման ու ճայթյունի ֆիզիկային, տուրբուլենտությանը՝ այդ շարժընթացներում: Առաջարկել է սպին. ճայթյունի տեսությունը: ԽՍՀՄ-ում միջուկ. զենքի ստեղծման աշխ-ների ղեկ–ներից:

ԽՍՀՄ Պետ. (1949, 1951, 1954), Լենինյան (1958) մրց-ներ:

ՇՉՈՐՍ Նիկոլայ Ալեքսանդրովիչ (1895–1919), Կարմիր բանակի հրամ., Ռուսաստանում Քաղաքաց. պատերազմի մասնակից: 1918–ին կռվել է գերմ. ինտերվենտների և հետմանականների դեմ: 1918–ի նոյեմբ. 1–ից՝ Ուկր. խորհրդ. դիվիզիայի 2–րդ բրիգադի հրամ.: Զոհվել է մարտում:

ՇՉՈՒԿԻՆ Ալեքսանդր Նիկոլաևիչ (1900–1990), ռուս. ռադիոտեխնիկ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1953), գեն–լեյտ–ճարտարագետ (1971): Սոց. աշխ. հերոս (1956, 1975): Աշխ-ները վերաբերում են կարճ ալիքների տարածմանը, հեռավոր կարճալիք. կապի հաշվարկի տեսությանը և հաշվարկի մեթոդներին:

ԽՍՀՄ Պետ. (1953), Լենինյան (1957) մրց-ներ:

ՇՉՈՒԿԻՆ Բորիս Վասիլևիչ (1894–1939), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1936): 1920–ից՝ ՄԳԱԹ–ի 3–րդ ստուդիայի (1926–ից՝ Ե. Վախթանգովի անվ. թատրոն) դերասան (Տարտալյա՝ Կ. Գոցցիի «Արքայադուստր Տուրանդոտ», Եգոր Բուլըչով՝ Մ. Գորկու «Եգոր Բուլըչովը և ուրիշներ», Լենին՝ Ն. Ֆ Պոգոդինի «Հրացանավոր մարդը», ևն): Նկարահանվել է «Լենինը հոկտեմբերին», «Լենինը 1918 թվականին» ֆիլմերում:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, հետմահու):

ՇՉՈՒԿՈ Վլադիմիր Ալեքսեևիչ (1878–1939), ռուս. ճարտ., բեմանկարիչ: Կառուցել է (Վ. Գ. Գելֆրեյխի հետ) մի շարք հաս. խոշոր շինություններ՝ ԽՍՀՄ պետբանկի նոր շենքը Մոսկվայում (այժմ՝ Ռուսաստանի պետբանկ, 1928–40), Դոնի Ռոստովի դրամատիկ. թատրոնը (1930–35) ևն, ձևավորել «Բորիս Գոդունով» (1937) ներկայացումը (Մոսկվայի Փոքր թատրոն):

ՇՉՈՒՍԵՎ Ալեքսեյ Վիկտորովիչ (1873–1949), ռուս. ճարտ.: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1943): Նրա նախագծերով Մոսկվայում կառուցվել են Վ. Ի. Լենինի դամբարանը (1924–30), «Մոսկվա» հյուրանոցը (համահեղ., 1932–38), մասնակցել է Մոսկվայի վերակառուցման հատակագծի մշակմանը (1918–25): ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1946, 1948, 1952):

ՇՊԱԿ Վալերի Գրիգորևիչ (ծ. 1944), իմպուլս. տեխնիկայի ռուս. գիտնական: Աշխ-ները վերաբերում են ուժեղահոսանք իմպուլս. գեներատորներին, լիցքավորված մասնիկների արագացուցիչներին և էլեկտրամագնիս. ճառագայթման հզոր գեներատորներին: ՌԴ Պետ. մրց. (1998):

ՇՊԱՆԲԵՐԳ (Spangberg, Shpanberg) Մարտին Պետրովիչ (մոտ 1700–1761), ռուս. ծովագնաց (ծագումով՝ դանիացի): Կամչատկայի 1–ին (1725–30) և 2–րդ (1733–43) արշավախմբերի մասնակից: 1738–39–ին հայտնաբերել է Կամչատկայից Ճապոնիա ծով. ուղին, ուսումնասիրել Կուրիլյան կղզեխումբը:

ՇՊԵԵ (Spee) Մաքսիմիլիան Ֆոն (1861–1914), կոմս, գերմանացի փոխծովակալ: ԱՀՊ–ի ժամանակ՝ հածանավ. նավախմբի հրամ. Խաղաղ օվկ–ում: Կորոնել նվինգստ–ի մոտ (Չիլի) ջախջախել է անգլ. նավախումբը: Պարտություն է կրել Ֆոլկլենդյան կղզիների մոտ և զոհվել մարտում:

ՇՊԵԵՐ (Speer), գերմանացի ճարտ–ներ, քաղաքաշինարարներ: **Ալբերտ Շ.** (1905–1981), եղել է Հիտլերի կառ–յան սպառազինության և ռազմամթերքի ոայխսնախարար (1942–45): Հեղինակ է արդեկոյի ոճով նախագծերի (Բեռլինի վերակառուցման, 1934–ից, սպառազինության և զինվ. արդ–յան նախ–յան և այլ շենքերի): 1946–ին Նյուրնբերգի դատավարությամբ դատապարտվել է 20 տարվա ազատազրկման: Որդին՝ **Ալբերտ Շ.** (ծ. 1934), 1964–ին Մայնի Ֆրանկֆուրտում բացել է ճարտ. ֆիրմա. էկոլոգ. քաղաքաշինության սկզբունքներով նախագծել է Շանհայի միջազգ. ավտոմեքենաների քաղաքը (2000–ից), նաև Բաքվի, Կահիրեի, Մոսկվայի շրջանների հատակագծերը:

ՇՊԵՄԱՆ (Spemann) Հանս (1869–1941), գերմանացի սաղմնաբան, փորձարար. սաղմնաբանության հիմնադիրներից: Ստեղծել է սաղմի ուշ տարբերակվող մասերի զարգացումը մակածող գործոնների վերաբերյալ ուսմունք: Նոբելյան մրց. (1935):

ՇՊԵՆԳԼԵՐ (Spengler) Օսվալդ (1880–1936), գերմանացի փիլ., պատմաբան: Կյանքի փիլ–յան ներկայացուցիչ: Շ–ին մեծ հռչակ է բերել «Արևմուտքի մայրամուտը» (հ. 1, 2, 1918, 1922) աշխ–ը: Զար–

գացրել է մշակույթի՝ որպես ինքնապարփակ 8 (եգիպտ., հնդ., բաբել., չին. ևն) «օրգանիզմներ» (որոնք արտահայտում են ժողդ-ի կոլեկտիվ «ոգին» և յուրաքանչյուրը շուրջ 1000 տարվա կյանք ունի) մասին ուսմունքը: Ըստ Շ-ի՝ օրգ. մշակույթը, մեռնելով, վերածվում է իր հակոտնյային՝ քաղաքակրթությանը, որտեղ իշխում է տեխնիցիզմը:

ՇՊԻԼԼԵՐ Նատալյա Դմիտրիևա (1909–1995), ռուս. երգչուհի (քնար. սոպրանո): ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1947): 1935–58-ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մեներգչուհի (Մարգարիտ՝ Շ. Գունոյի «Ֆաուստ», ևն):
ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1943, 1950):

ՇՊԻՆԵԼ Իոսիֆ Արոնովիչ (1892–1980), ուկրաինացի նկարիչ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1940): Ձևավորել է «Գիշերային կառապան» (1929), «Պետերբուրգյան գիշեր» (1934), «Ալեքսանդր Նևսկի» (1938), «Իվան Ահեղ» (1945, 1958) և այլ ֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ՇՊԻՆԵԼ, բարդ օքսիդների կարգի միներալ՝ $MgAl_2O_4$: Ութանիստ բյուրեղներ են: Թափանցիկ կարմիր և կապույտ Շ-ները (այսպես կոչված՝ ազնիվ Շ.) թանկարժեք քարեր են: Կարծր.՝ 8, խտ.՝ 3,6–3,7 *գ/սմ*³: Արհեստ. Շ. օգտագործվում է որպես դիէլ. և մագնիս. նյութ:

ՇՊԻՏԱԼՆԻ Բորիս Գավրիլովիչ (1902–1972), ավիացիոն սպառազինության ռուս. կոնստրուկտոր: Սոց. աշխ. հերոս (1940): Ստեղծել է արագաձիգ գնդացիր (ՇԿԱՍ, Ի. Ա. Կոմարիցկու հետ, 1930), հրանոթ (ՇՎԱԿ, Ս. Վ. Վլադիմիրովի հետ, 1936) ևն:
ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1942):

ՇՊԻՏԵԼԵՐ (Spitteler) Կառլ (1845–1924), շվեյցարացի գերմանագիր գրող: Հեղինակ է «Օլիմպիական գարուն» (1900–05, բրվիս. հրտ.՝ 1910) էպիկ. պոեմի, «Իմագո» (1906) վեպի, որի բուն թեման անձներդաշնակությունն է արվեստագետի ու հաս-յան և արվ-ի ու իրականության միջև: Նոբելյան մրց. (1919):

ՇՊԻՑԲԵՐԳԵՆ (Spitsbergen, ռուս. այլ անունով՝ Գրումանտ, նորվեգ.՝ Սվալբարդ), կղզեխումբ Հս. սառուցյալ օվկ-ում, Նորվեգիայի տիրույթ: Տարածքը՝ մոտ 62 *կմ*²: Հիմն. կղզիներն են՝ Շպիցբերգեն (Արմ. Շպիցբերգեն), Հս-արլ. Երկիր: Բարձր.՝ 1717 *մ* (Նյուտոն լ.): Կան սառցադաշտեր (ընդհ. տարածքը՝ 35,1 հգ. *կմ*²), քարածխի հանքեր: Վարչ. կենտրոնը՝ Լոնգիր: 1925-ին պաշտոնապես հայտարարվել է Նորվեգիայի թագավորության մաս:

ՇՊԻՑՆԵՐ (գերմ.՝ Spitz), երկար, փափուկ մազերով գեղազարդիչ շների ցեղախումբ: Բուծվել է Գերմանիայում: Տարբերում են խոշոր (վոլֆ–Շ.), փոքր և գաճաճ Շ.: Բուծում են շատ երկրներում:

ՇՊՈԼՍԿԻ Էդուարդ Վլադիմիրովիչ (1892–1975), ռուս. ֆիզիկոս: ՌԽՖՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1968): Աշխ-ները վերաբերում են մոլ. սպեկտրադիտմանը: Հայտնաբերել է (աշխատակիցների հետ) հատուկ լուծիչներում բարդ օրգ. մոլ-ների քվազիգծային սպեկտրները՝ ցածր ջերմաստիճաններում (Շ-ի էֆեկտ): ԽՍՀՄ Պետ. մրց. (1970):

ՇՊՈՆ (գերմ.՝ Span, Spon), 1. փայտանյութի բարակ թերթեր (0,2–10 *մմ*), ստացվում են ծլեպահանման, շաղնաոանդման կամ նրբատախտակաղոցման հաստոցների վրա: Օգտագործվում է փայտից և փայտանյութից շինվածքների երեսպատման համար: 2. Տպագր. տողանջատման նյութ՝ ձեռքով շարվածքի դեպքում:

ՇՊՈՐ (Spohr) Լյուդվիգ (Լուսի, 1784–1859), գերմանացի կոմպոզիտոր, ջութակահար, դիրիժոր: Գերմ. առաջին ռոմանտիկ. օպերայի («Ֆաուստ», 1816) հեղինակը: Գրել է նաև օրատորիաներ, սիմֆոնիաներ, կոնցերտներ՝ ջութակի և նվագախմբի համար, լար. կվարտետներ, կամերգործիք. անսամբլներ ևն:

ՇՊՐՈՏ (Sprattus), ծովատառեխների ընտանիքի մանրաձկների սեռ: Երկ.՝ մինչև 18 *սմ*: Հայտնի է 4 տեսակ՝ բարեխառն և մերձարևադարձ. ջրերում (կոչվում է նաև կիլկա): Արդյունագործ. ձուկ է:

ՇՎԱԲԻԱ (Schwaben), տարածք, որտեղ բնակվել են ալեմանները (շվաբներ) վաղ միջնադարում: Գերմ. թագավորության ցեղ. դքսություն, գոյատևել է մինչև XIII դ-ի 2-րդ կեսը: Ընդգրկել է Վյուրտեմբերգը, Հվ. Բադենը, Էլզասը, Շվեյցարիայի ու Բավարիայի մի մասը:

ՇՎԱԲԻՆՍԿԻ (Švabinský) Մաքս (1873–1962), չեխ գեղանկարիչ, գրաֆիկ: Բնանկարներում («Բերք», 1927), որմնանկարներում, գրաֆիկ. գործերում («Օգոստոսյան կեսօր», 1918) պատկերել է բանաստեղծ. կերպարներ: Հեղինակ է նաև գրաֆիկ. դիմանկարների («Յ. Ներուդա», 1901, «Յ. Ֆուչիկ», 1950, ևն):
ՉՍՍՀ Պետ. մրց. (1952):

ՇՎԱՆ (Schwann) Թեոդոր (1810–1882), գերմանացի կենսաբան: Բջջ. տեսության հիմնադիրներից: Իր սեփ. հետազոտությունների, նաև Մ. *Շլեյդենի* և ուր. աշխ-ների հիման վրա առաջինն է ձևակերպել բջիջների գոյացման, բոլոր օրգանիզմների բջջ. կառուցվածքի վերաբերյալ հիմն. դրույթները: Ենթաստամոքսագեղձի հյութում հայտնաբերել է պեպսինը (1836): Ծայրամաս. նյարդաթելերի թաղանթ. բջիջները կոչվել են Շ-ի բջիջներ:

ՇՎԱՐՑ (Schwartz) Եվգենի Լվովիչ (1896–1958), հրեա դրամատուրգ: Հեղինակ է «Մերկ թագավորը» (1934, ըստ Հ. Անդերսենի հեքիաթի, հրտ.՝ 1960), «Ստվեր» (1940), «Վիշապ» (1944) հեքիաթ-պիեսների, «Սովորական հրաշք» (1956, կինոնկար՝ 1965, հեռուստաֆիլմ՝ 1978) առակ-պիեսի, նաև մանկ. պիեսների, վիպակների, սցենարների, 1942–52-ի ժամանակաշրջանի մասին օրագրությունների (հրտ.՝ 1990), «Հեռախոսագիրք» (հրտ.՝ 1996) հուշագրության: Հայ. հրատարակվել են «Առաջին դասարանցին» (1950) պատմվածքը, «Մեր գործարանը» (1951) վիպակը և այլ գործեր:

ՇՎԱՐՑ Իսահակ Իոսիֆովիչ (1923–2009), հրեա կոմպոզիտոր: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1984): ՌԴ ժող. արտիստ (1996): Հեղինակ է կինոյի (շուրջ 80) և թատրոնի երաժշտության («Դինգո վայրի շունը», 1962, «Կարամազով եղբայրներ», 1969, «Անապատի սպիտակ արևը», 1970, «Փրկարարը», 1980, ևն), բալետների («Նախօրեին»՝ ըստ Ի. Ս. Տուրգենևի, 1960, «Հրաշքների աշխարհ», 1967), սիմֆոնիաների, կամեր-գործիք. և այլ երկերի: ՌԴ Պետ. (1997), նախագահի (2003) մրց-ներ:

ՇՎԱՐՑ Մելվին (1932–2006), ամերիկացի ֆիզիկոս: Բացահայտել է (ուր. հետ) սիգմա-զրո-հիպերոնը, պիոնիումը: Փորձով ապացուցել է հիպերոնների տրոհման մեջ զույգության խախտումը (ուր. հետ, 1957), նաև 2 տեսակի նեյտրինոների գոյությունը (1962):
Նոբելյան մրց., 1988, Լ. *Լեդերմանի* և Ջ. *Ստեյնբերգերի* հետ):

ՇՎԱՐՑԵՆԵԳԵՐ (Schwarzenegger) Առնոլդ (ծ. 1947), ամերիկ. կինոյի ավստրիացի դերասան: Բոդիբիլդինգի աշխարհի բազմակի չեմպիոն: 2003–11-ին՝ Կալիֆոռնիայի նահանգապետ: Մարմնավորել է ուժեղ, անվախ, դաժան գերմարդու («Տերմինատոր», «Գիշատիչը», «Բարբարոս Կոնանը» ևն), առավել մարդկային և գրավիչ («Մանկապարտեզի ոստիկանը», «Երկվորյակներ», «Տերմինատոր-2: Դատաստանի օրը», «Ճշմարիտ սուտ», «Հիշել ամեն ինչ» ևն) կերպարներ:

ՇՎԱՐՑԿՈՊՖ (Schwarzkopf) Էլիզաբեթ (1915–2006), գերմանացի երգչուհի (սոպրանո): 1942–51-ին՝ Վիեննայի պետ. օպերային, 1951-ից՝ Լոնդոնի «Քովենտ Գարդեն» թատրոնների մեներգչուհի: Մասնակցել է Զալցբուրգի և Բայրոյթի փառատոներին: Յ. Ս. Բախի կանտատների և «Զարչարանքների», Վ. Ա. Մոցարտի, Ջ. Վերդիի, Ռ. Վագների, Ջ. Պուչչինիի, Ռ. Շտրաուսի օպերաների լավագույն մեկնաբաններից:

ՇՎԱՐՑՇԻԼԴ (Schwarzschild) Կառլ (1873–1916), գերմանացի աստղագետ: Մշակել է լուսանկարչ. աստղ. լուսաչափության մեթոդը, ստեղծել 3500 աստղերի փայլերի լուսանկարչ. բնորոշումը պարունակող աստղացուցակ (1910–12): Ստեղծել է ճառագայթ. հավասարակշռության տեսությունը և այն կիրառել աստղերի մթն-ների նկատմամբ: Առաջինն է ստացել էյնշտեյնի հարաբերականության տեսության հավասարումների ճշգրիտ լուծումները:

ՇՎԱՐՑՇԻԼԴԻ ՕՐԵՆՔ, t պահաժամերի սահմանափակ տիրույթների համար սահմանում է լուսանկարչ. սևացման համեմատականությունը $E t^p$ արտադրյալին, որտեղ E-ն լուսավորվածությունն է, $P \approx 0{,}7–0{,}9$՝ Շվարցշիլդի հաստատունը, որը կախված է լուսանյութի տեսակից: Ձևակերպել է Կ. *Շվարցշիլդը* (1899–1900):

ՇՎԵԴԱԿԱՆ ՃԱՆՃԵՐ (Oscinella), հացազգիների ճանճերի ընտանիքի միջատներ, հացահատիկ. և կեր. հացազգիների վնասատուներ են (հատկապես՝ վարսակի և գարու Շ. ճ.): Սև են՝ դեղին փորիկով, երկ.՝ 1,5–3 *մմ*: Մնվում են (թրթուրները) ցողունի ներսում:

ՇՎԵԴԵՐԵՆ, *շվեդների* լեզուն, Շվեդիայի և Ֆինլանդիայի (ֆիններ-ի հետ) պետ. լեզուն: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի գերմ. ճյուղին: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՇՎԵԴԻԱ, (Sverige), **Շվեդիայի Թագավորություն** (Konungariket Sverige), պետություն Հս. Եվրոպայում: Սահմանակից է Նորվեգիային և Ֆինլանդիային: Տարածքը՝ 450 հգ. *կմ*², բն.՝ 10 մլն (2016): Մայրաքաղաքը՝ *Ստոկհոլմ*: Պետ. լեզուն՝ շվեդ.: Կառավարման ձևը՝ սահմանադրամիապետ.: Պետության գլուխը թագավորն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը (ռիկսդագ): Բաժանված է 24 վարչ. լեների: Հավատացյալների մեծ մասը քրիստոնյա (լյութերական) է: Անդամակցում է ՄԱԿ-ին, ԵՄ-ին, ԵԱՀԿ-ին, ԵԽ-ին ևն: Բարձր զարգացած երկիր է, ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 36,8 հգ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է մեքենաներ և սարքավորումներ, անտառանյութ, մետաղե իրեր, քիմիկատներ ևն, ներմու-

ծում՝ նավթ և նավթամթերք, մեքենաներ, սննդամթերք, հագուստ ևն: Դրամ. միավորը՝ շվեդ. կրոն:

Մ. թ. առաջին դարերում Շ–ում բնակվել են հս–գերմ. ցեղեր՝ սվիոններ (սվեյներ), գաուտներ ևն: VII–IX դդ–ում վիկինգները (նույն նորմանները կամ վայրագներն են) առևտրի և թալանի նպատակով ասպատակել են հարևան երկրները (Ռուսիա, Բյուզանդիա, Արաբ. խալիֆություն ևն): XI դ–ի սկզբին տարածվել է քրիստոնեություն, երկիրը միավորվել է միասն. թագավորության մեջ: XII դ–ի կեսից շվեդ. ֆեոդալներն արշավանքներ են ձեռնարկել դեպի արլ.՝ Ֆինլանդիա, Մերձբալթիկա, Ռուսիայի հս, որտեղ նրանք պարտվել են ***Ալեքսանդր Նևսկուն***: 1389–ին Դանիայի հետ կնքել է ունիա, որին 1397–ին միացել է նաև Նորվեգիան: 1434–ին բռնկել է գյուղաց. պատերազմ, որը շուտով վերաճել է հակադանիական պայքարի և ունիայի խզման: Դանիական տիրապետությանը վերջ է տվել 1521–ին Գուստավ Էրիկսոնի (1523–ից՝ թագավոր Գուստավ I Վազա) գլխավորած ժող. ապստամբությունը: 1700–21–ին Հս. պատերազմում Շ. ժամանակավոր հաջողության է հասել, սակայն խոշոր պարտություն է կրել Ռուսաստանում և կորցրել իր տիրույթներն Արլ. Մերձբալթիկայում և Հվ–արմ. Կարելիայում: 1805–10–ի և 1813–14–ի պատերազմներին Շ. մասնակցել է հակաֆրանս. դաշինքի կազմում: Դանիայի հետ կնքված Քիլլի պայմանագրով (1814) Շ. ստացել է Նորվեգիան (ունիան գոյատևել է մինչև 1905–ը): Օսկար II–ի օրոք (1872–1907) Շ. դարձել է չեզոք երկիր՝ բայց որոշակի գերմ. կողմնորոշմամբ, որը պահպանվել է նաև ԱՀՊ–ի տարիներին: ԵՀՊ–ի ժամանակ Շ. հայտարարել է չեզոքություն: Պատերազմի ավարտից հետո հետևել է ռազմաքաղ. դաշինքներին չմիանալու սկզբունքին: 1932–76–ին, 1982–91–ին և 1994–2006–ին իշխանության ղեկին եղել է Սոցիալ–դեմոկրատ. աշխ. կուս–յունը (հիմն.՝ 1889): 2006–ի և 2010–ի ընտրություններում հաղթել է Հանուն Շ–ի դաշինքը: 1995–ին Շ. անդամակցել է ԵՄ–ին:

Շվեդահայ համայնքը կազմավորվել է 1970–ական թթ–ին՝ Լիբանանից, Պաղեստինից, Սիրիայից, Իրանից, 1990–ական թթ–ին ՀՀ–ից գաղթած հայերով: Ներկայում հայերի թիվը Շ–ում շուրջ 6 հզ. է, մեծ մասը բնակվում է Ստոկհոլմում և Ուփսալայում: 1974–ին Ստոկհոլմում հիմնադրվել է Հայ մշակութ. միությունը: Հետագայում ևս ստեղծվել են հայկ. տարբեր ընկ–ներ և միություններ (Ուփսալայի հայ մշակութ., Հայ–շվեդ., «Րաֆֆի», «Արարատ» ևն): Գործում են երգչախմբեր, գր. խմբակներ, գեղագիտ. դաստիարակության կենտրոններ, լույս է տեսնում *«Նոր հորիզոն»* պարբ–ը:

ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ, հիմնադրվել է 1739–ին Ստոկհոլմում: Որոշումներ է ընդունում ֆիզիկայի, քիմիայի (1901–ից) և տնտեսագիտ–յան (1969–ից) բնագավառներում *Նորելյան մրցանակի* հանձնման վերաբերյալ:

ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՕՊԵՐԱ, Շվեդիայի առաջատար օպեր. թատրոնը: Բացվել է 1773–ին Ստոկհոլմում (արդի շենքը՝ 1898–ից): Երկացանկում՝ Ռ. Վագների (XX դ–ի օպեր. լավագույն կատարումները), նաև դաս. ու շվեդ կոմպոզիտորների օպերաներ: Սաանաճայուղը՝ Դրոտնինգհոլմի դղյակում (1777):

ՇՎԵԴԵՆԵՐ, ժողդ, Շվեդիայի հիմն. բնակչությունը (7,7 մլն, 2010): Ապրում են նաև Նորվեգիայում (28,7 հզ.), ԱՄՆ–ում (2,4 մլն, 2000) ևն: Լեզուն՝ շվեդ.: Հավատացյալները քրիստոնյա են (հիմնականում՝ լյութերական):

ՇՎԵԴՈՎԱ Նատալյա Յուլևնա (1916–2009), ռուս. լեզվաբան: ՌԳԱ ակադ. (1997): Ռուս–ի քերակ–յան ակադեմ. հրտ–յունների, «Ռուսերենի քերականության» (հ. 1–2, 1980, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1982) գլխ. խմբ., Ս. Ի. Օժեգովի «Ռուսերենի քերականության» (9–23–րդ հրտ–ներ) պատ. խմբ., «Ռուսերենի բացատրական բառարան»–ի (1992, 4–րդ հրտ.՝ 1997, Ս. Ի. Օժեգովի հետ) համահեղ., «Ռուսերենի իմաստաբանական բառարան»–ի (հ. 1–4, 1998–2007) հեղինակ և խմբ.:

ՇՎԵՅԱՐԱՅԻՆԵՐ, ժողդ–ների խումբ, Շվեյցարիայի հիմն. բնակչությունը: Ներառում է գերմանա– (5,3 մլն, 2000), ֆրանկա–(1,5 մլն), իտալա– (313,4 հզ.) և ռետոռոմանցիներին (43,7 հզ.): Խոսում են, համապատասխանաբար, գերմ–ով, ֆրանս–ով, իտալ–ով և ռետոռոման–ով: Հավատացյալները հիմնականում բողոքական են, կաթոլիկ:

ՇՎԵՅԱՐԻԱ. (գերմ.՝ Schweiz, ֆրանս.՝ Suisse, իտալ.՝ Svizzera), **Շվեյցարական Համադաշնություն**, պետություն Կենտր. Եվրոպայում: Սահմանակից է Գերմանիային, Ավստրիային, Լիխտենշթայնին, Իտալիային և Ֆրանսիային: Տարածքը՝ 41,3 հզ. *կմ²*, բն.՝ 8 մլն (2013): Մայրաքաղաքը՝ *Բեռն*: Պետ. լեզուները՝ գերմ., ֆրանս., իտալ., ռետոռոման.: Պետության գլուխը համադաշնության նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ դաշն. ժողովը: Բաժանված է 26 կանտոնի: Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ ու բողոքական է: Շ. չեզոք երկիր է (1815–ից), անդամակցում է ՄԱԿ–ին (2002–ից): Բարձր զարգացած երկիր է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 41,7 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է դեղորայք, մեքենաներ և սարքավորումներ, ժամացույցներ, սննդամթերք ևն, ներմուծում նավթամթերք, տրանսպորտ. մեքենաներ, սննդամթերք, մետաղներ, հագուստ ևն: Դրամ. միավորը՝ շվեյցար. ֆրանկ:

Մ. թ. ա. II դ–ում Շ–ի տարածքի մեծ մասում բնակվել են հելվետ կելտ. ցեղերը (այստեղից՝ Շ–ի հին անվանումը՝ Հելվեցիա): Մ. թ. ա. I դ–ից նրանց նվաճել են հռոմեացիները, մ. թ. V դ–ից՝ ալեմանները, բուրգունդներն ու օստգոթերը, VI դ–ում՝ ֆրանկները: VI–VII դդ–ում բնակչությունը քրիստոնեացել է: IX դ–ում մտել է *Հռոմեական սրբազան կայսրության* մեջ: 1231–ին Ուրի և 1240–ին Շվից կանտոնները անկախացել են *Հաբսբուրգներից*: 1315–1513–ին կազմավորված 13 իրավահավասար կանտոնների համադաշնությունը (միջազգայնորեն ճանաչվել է 1648–ի Վեստֆալյան հաշտությամբ) գոյատևել է մինչև 1798–ը, երբ Շ. գրավել են ֆրանս. զորքերը՝ ստեղծելով Ֆրանսիայից կախյալ միասն. Հելվետ. Հանրապետությունը (մինչև 1803–ը): Վիեննայի վեհաժողովը 1815–ին հաստատել է Շ–ի սահմանները և ընդունել նրա «հավերժ» չեզոքությունը: 1848–ին դարձել է միասն. դաշնակց. պետություն: ԱՀՊ–ի և ԵՀՊ–ի ժամանակ պահպանել է չեզոքություն: ՄԱԿ–ին անդամակցել է 2002–ին: 1972–ին մտել է եվրոպ. տնտ. տարածքի մեջ, 2000–ական թթ–ի սկզբներին ԵՄ–ի հետ ստորագրել է «փաթեթային պայմանագրեր»:

Շ. եկած առաջին հայերը (XVII–XVIII դդ.) առևտրականներ էին, XIX դ–ի կեսից նաև սովորելու են եկել հայ երիտասարդներ: Ժնևի, Լոզանի, Բազելի համալսարաններում ուսանել են հայ գրողներ Ռուբեն Սևակը, Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը և ուր.: 1920–ական թթ–ին Շ–ի հայ համայնքն ստվարացել է Թուրքիայից բռնագաղթած հայերով, իսկ 1960–70–ական թթ–ին այստեղ են տեղափոխվել հայեր Լիբանանից, Իրանից, 1990–ական թթ–ից՝ նաև ՀՀ–ից: Ներկայում Շ–ում բնակվում է շուրջ 3–5 հզ. հայ, հիմնականում՝ Ժնև, Յուրիխ, Բազել, Լոզան ք–ներում: Ազգ. կյանքի կենտրոնը Ժնևն է: Այստեղ է Շ–ի հայոց միության վարչությունը, ՀԱԵ Շ–ի թեմի առաջնորդանիստ Սբ Հակոբ եկեղեցին, որին կից գործում են կիրակնօրյա դպրոց, Հայ տիկնանց միությունը, Երիտասարդության ակումբը, Հայ բժիշկների միությունը, «Պրո Արմենիա» կազմ–յունը, «Անի» պարի խումբը, «Արաքս» երգչախումբը ևն: XIX դ–ի վերջերից հրատարակվել են 10 անուն հայ. պարբ–ներ: Ժնևի համալսարանում գործում է հայագիտ–յան ամբիոն: Շ–ի խորհրդարանը 2003–ին ճանաչել է Հայոց ցեղասպանությունը և դրա ժխտման համար սահմանել քր. պատասխանատվություն:

ՇՎԵՅՑԵՐ (Schweitzer) Ալբերտ (1875–1965), գերմանացի փիլ., աստվածաբան, երաժշտագետ, երգեհոնահար, բժիշկ, քարոզիչ: 1913–ին Լամբարենեում (Գաբոն) հիմնադրել է հիվանդանոց բորոտների համար: Եղել է Յ. Ս. Բախի երկերի լավագույն մեկնաբաններից. աշխ–ները վերաբերում են նրա արվ–ին:

Յ. Վ. Գյոթեի (1928), Խաղաղության Նոբելյան (1952) մրց–ներ:

ՇՎԵՅՑԵՐ Միխայիլ Աբրամովիչ (1920–2000), ռուս. կինոռեժ.: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1965): ԽՍՀՄ ժող. արտիստ (1990): Նկարահանել է «Օտար ազգականներ» (1956), «Հարություն» (1960–62), «Ոսկե հորթ» (1968), «Միստր Մաք–Քինլիի փախուստը» (1975), «Փոքր ողբերգություններ» (1980), «Մեռած հոգիներ» (1984, վերջին երկուսը՝ հեռուստաֆիլմ), «Կրեյցերյան սոնատ» (1987), «Լսիր, Ֆելլինի...» (1993, Ս. Միլկինայի հետ) և այլ ֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1977):

ՇՎԵՌՆԻԿ Նիկոլայ Միխայլովիչ (1888–1970), խորհրդ. պետ. և քաղ. գործիչ: 1936–38–ին՝ Չելոսլովակիայի կոմկուսի ԿԿ պաշտոնաթերթի՝ «Ռուդե պրավո»–ի գլխ. խմբ.: Սոց. աշխ. հերոս (1958): 1925–1927–ին՝ ՀամԿ(բ)Կ Լենինգրադի մարզկոմի և կոմկուսի քարտուղար, 1944–46–ին՝ ՌԽՖՍՀ, 1946–53–ին՝ ԽՍՀՄ ԳԽ նախագահության նախագահ, 1956–66–ին՝ ԽՄԿԿ ԿԿ–ին առընթեր կուս–յան վերահսկողության հանձնաժողովի նախագահ:

ՇՎԵՅՈՎ Արկադի Դմիտրևիչ (1892–1953), ռուս կոնստրուկտոր: Ճարտարագիտավիացիոն ծառայության գնդ–լեյտ. (1948): Սոց. աշխ. հերոս (1942): Շ–ի ղեկավարությամբ ստեղծվել են մի շարք գլան. աստղակերպ ավիացիոն շարժիչներ՝ օդ. հովացմամբ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942, 1943, 1946, 1948):

ՇՎԻ, 1. **պեպուկ**, կավե, ձևավոր (սովորաբար՝ թռչնանման) երաժշտ. գործիք–սուլիչ՝ 2 փողով (երկ.՝ 10–12 *սմ*) և 2 ձայնանցքով: Այժմ գործածում են որպես խաղալիք: 2. Շ–*թութակ*: Գործածվում են ռեգիստր. տարատեսակները, որի շնորհիվ Շ–թութակի դերը, որպես մենակատար և անսամբլ. երաժշտ. գործիք, մեծացել է:

ՇՎԻՆԳԵՐ (Schwinger) Ջուլիան (1918–1994), ամերիկացի ֆիզիկոս–տեսաբան: Քվանտ. էլեկտրադինամիկայի հիմնադիրներից: Առաջարկել է (U. *Տոմոնագայի* հետ) վերանորմավորման մեթոդ: Զարգացրել է Գրինի ֆունկցիայի մեթոդը՝ բազմամասնիկ համակարգի տեսության մեջ: Առաջարկել է միջուկներից նեյտրոնների ցրման տեսություն (**Շվինգերյան ցրում**): Կանխատեսել է (ուր–ից անկախ) 2 տիպի նեյտրինոների գոյությունը:

Նոբելյան մրց. (1965, Ս. Տոմոնագայի և Ռ. *Ֆեյնմանի* հետ):

ՇՎԻՑ (գերմ.՝ Schwyz), տավարի ցեղ: Ստացվել է Շվեյցարիայի լեռն. շրջաններում: Ցուլերի կ. զ.՝ 800–950 (երբեմն՝ 1200) *կգ*, կովերինը՝ 550–600 (մինչև՝ 800) *կգ*: Տարեկան միջին կաթնատվությունը՝ 3500–4000 *կգ*, կաթի յուղայնությունը՝ 3,7–3,8 %: Շ–ի հետ տրամախաչմամբ ՀՀ–ում ստացվել է ***կովկասյան գորշ տավարի ցեղը***: 2007–13–ին ՀՀ են ներկրվել 1881 գլուխ Շ., սիմենթալ և հոլշտի ցեղերի երինջներ:

ՇՎԱՅԱՄ (Švedas) Յոնաս (1908–1971), լիտվացի խմբավար, կոմպոզիտոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1954): Լիտվ. «Լետուվա» ժող. երգի–պարի անսամբլի հիմնադիր–գեղ. ղեկ. (1940–62), հանրապետ. երգի տոների գլխ. դիրիժոր (1946–70): Հեղինակ է կանտատների, գործիք. երկերի, մեներգերի և խմբերգերի: Մշակել է ժող. երգեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

ՇՏԱԲ (գերմ.՝ Stab), զորքերը կառավարելու հիմն. մարմին: Լինում են համազոր., զորատեսակների և ՋՈւ տեսակների Շ–ներ: Կարևոր խնդիրը զորքերի և ղեկավարող մարմինների մշտ. մարտ. պատրաստության ապահովումն է, իրադրության վերաբերյալ տվյալների հավաքումը, ուսումնասիրումը, մարտ. գործողությունների պլանավորումը ևն:

ՇՏԱԲԱ–ԿԱՊԻՏԱՆ, Ռուսաստանում (1797–1917) և այլ երկրների բանակներում (բացի հեծելազորից)՝ պորուչիկի կոչմանը հաջորդող զինվ. կոչում: Փոխարինել է շտաբս–ռոտմիստրին:

ՇՏԱԼ (Stahl) Գեորգ Էռնստ (1659–1734), գերմանացի քիմիկոս և բժիշկ: Զևակերպել է (1697–1703) առաջին ընդհ. քիմ. տեսությունը՝ ֆլոգիստոնյան տեսությունը, որը հետագայում մերժել է Ա. *Լավուազիեն*:

ՇՏԱԿԵՆՇՆԱՅԴԵՐ (Stackenschneider) Անդրեյ Իվանովիչ (1802–1865), գերմանացի ճարտ.: Ս. Պետերբուրգում պատմ. ոճով կառուցել է կայսեր. և իշխան. պալատներ՝ Մարիինյան (1839–44, այժմ՝ քաղաքապետարանը), Նիկոլաևյան (1853–61, այժմ՝ Աշխ–ի պալատ):

ՇՏԱՄՄ (գերմ.՝ Stamm), 1 տեսակի միկրոօրգանիզմների մաքուր մանրէախումբ, որի ձևաբան. և ֆիզիոլոգ. առանձնահատկություններն ուսումնասիրված են: Միկրոօրգանիզմների միևնույն տեսակի տարբեր Շ–ները մի շարք հատկանիշներով (օր.՝ հակաբիոտիկների նկատմամբ զգայունությամբ) միմյանցից տարբեր են:

ՇՏԱՅՆ Ալեքսանդր Պետրովիչ (1906–1993), ռուս. դրամատուրգ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1987): Հեղինակ է Ֆ. Ֆ. Ուշակովի մասին «Ծովակալի դրոշը» (1950), «Անձնական գործ» (1954), «Օվկիանոս» (1961), «Ծափահարություններ» (1967) և այլ պիեսների, նաև սցենարների, հուշերի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949, 1951):

ՇՏԱՅՆ (Stein) Էդիթ (1891–1942), հրեա փիլ.: Է. Հուսեռլի աշակերտը և աշխատակցուհին, կարմելիտուհի (1933): Զոհվել է Օսվենցիմում: Հեղինակ է «Խաչի գիտությունը» աշխ–յան: Հռոմ. կաթոլիկ եկեղեցին Շ–ին սրբադասել է (1998):

ՇՏԱՅՆ Հենրիխ Ֆրիդրիխ Կառլ (1757–1831), Պրուսիայի Կառ–յան ղեկ.՝ 1807–08–ին: Իրականացրել է (չնայած յունկերության դիմադրությանը) մի շարք բարենորոգումներ, որոնք հայտնի են որպես Շտայն–Հարդենբերգի բարենորոգումներ:

ՇՏԱՅՆ Պետեր (ծ. 1937), գերմանացի ռեժ.: 1970–ին Արմ. Բեռլինում հիմնադրել է «Շաուբյունե» թատրոնը (ղեկ.՝ մինչև 1990–ը): Բեմադրել է «Մայրը» (1970, ըստ Մ. Գորկու), Ա. Պ. Չեխովի «Երեք քույր» (1985), Էսքիլեսի «Օրեսթես» (1995), Վ. Շեքսպիրի «Համլետ» (1998), «Դևեր» (2009, ըստ Ֆ. Մ. Դոստոևսկու) ևն:

ՇՏԱՅՆԱԽ (Steinach) Էյգեն (1861–1944), ավստրիացի ֆիզիոլոգ: Աշխ–ները վերաբերում են կաթնասունների սեռի փոփոխմանը՝ սեռ. գեղձերի պատվաստման և հեռացման ճանապարհով, սերմնածորանի կապմանը՝ երիտասարդացման նպատակով:

ՇՏԱՅՆԲԵՐԳ (Steinberg) Մաքսիմիլիան Օսեևիչ (1883–1946), հրեա կոմպոզիտոր: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1934): Ուզբ. ԽՍՀ ժող. արտիստ (1944): Հեղինակ է «Մետոմորֆոզներ» (1914), «Թիլ Ուլենշպիգել» (1936) բալետների, «Երկիր և երկինք» դրամատիկ. պոեմի, «Զրահաբս» (1907) կանտատի, նաև սիմֆոնիաների (1906–42), «Հայաստանում» կապրիչչոյի և այլ գործերի: Շ–ին աշակերտել են Սարգիս Բարխուդարյանը, Ռոմանոս Մելիքյանը և ուր.: Գործիքավորել է Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի IV գործողությունը (1930, Մոսկվա, 1933, Երևան):

ՇՏԱՅՆԵՐ (Stainer) Յակոբ (1617–1683), ջութակ պատրաստող ավստրիացի վարպետ: Տիրոլի դպրոցի նշանավոր ներկայացուցիչ: Շ–ի պատրաստած գործիքներով նվագել են Ա. Կորելլին, Զ. Տարտինին, Յ. Ս. Բախը:

ՇՏԱՅՆԵՐ, **Շտեյներ** (Steiner), Ռուդոլֆ (1861–1925), գերմանացի փիլ., միստիկ: Անտրոպոսոֆիայի հիմնադիրը: Յ. Վ. Գյոթեի բնափիլ–յան հետևորդ: Շ–ի նախագծով Դոռնաահում կառուցվել է «ոգեգիտության ազատ համալսարանի» (Գյոթեանում) շենքը: Շարադրել է վալդորֆյան մանկավարժության հիմունքները:

ՇՏԱՅՆՄԵՑ (Steinmetz) Չառլզ Պրոտեուս (Կառլ Ավգուստ Ռուդոլֆ, 1865–1923), գերմանացի էլեկտրատեխնիկ: 1889–ից՝ ԱՄՆ–ում: «Ձեներալ էլեկտրիկ»–ի խոշոր էլ. մեքենաների և ապարատների նախագծերի գլխ. ճարտարագետ և ղեկ.:

ՇՏԱՅՆՇԼԱՅԳԵՐ (Steinschleiger) Վոլֆ Բենցիոնովիչ (1918–2013), հրեա ռադիոֆիզիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1987): Աշխ–ները վերաբերում են ԳԲՀ քվանտ. ուժեղարարներին, ռադիոալիքների ոչ գծային ցրմանը, ռադիոհոլոգրաֆության ևն:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1951, 1976):

ՇՏԱՐԿ (Stark) Յոհաննես (1874–1957), գերմանացի ֆիզիկոս: Հայտնաբերել է (1913) էլ. դաշտում սպեկտր. գծերի ճեղքումը (*Շտարկի էֆեկտ*): Նոբելյան մրց. (1919):

ՇՏԱՐԿԻ ԷՖԵԿՏ, արտաքին էլ. դաշտի ազդեցությամբ լիցքավորված մասնիկներից կազմված համակարգն ստանում է լրացուցիչ էներգիա, որի հետևանքով նրա էներգետիկ մակարդակները տեղաշարժվում և ճեղքվում են՝ առաջացնելով սպեկտր. գծերի տեղաշարժ և ճեղքում: Հայտնաբերել է Յ. *Շտարկը*:

ՇՏԱՈՒԴԻՆԳԵՐ (Staudinger) Հերման (1881–1965), գերմանացի քիմիկոս: Բարձրմոլ. միացությունների քիմիայի հիմնադիրներից: Ներմուծել է «մակրոմոլեկուլ» տերմինը, մշակել է պոլիմերների կառուցվածքի տեսությունը: Ուսումնասիրել է բնական և սինթետիկ մոլ–ները: Նոբելյան մրց. (1953):

ՇՏԱՈՒԴՏԵ (Staudte) Վոլֆգանգ Գեորգ (1906–1984), գերմանացի կինոռեժ.: Նկարահանել է «Մարդասպանները մեր մեջ են» (1946), «Հավատարիմ հպատակներ» (1951), «Վարդեր պարոն դատախազի համար» (1959), «Տղամարդկանց ընկերություն» (1964), «Ռելսերի միջև» (1978) և այլ ֆիլմեր:

ՇՏԱՈՒՖՖԵՆԲԵՐԳ (Stauffenberg) Կլաուս Շենկ ֆոն (1907–1944), գերմանացի սպա, գնդ., Հիտլերի դեմ մահափորձի գլխ. կազմակերպիչներից: 1944–ի հուլիսի 20–ին Շ. իր՝ որպես պահեստազորի շտաբի պետի, զեկույցի ժամանակ ռումբ է տեղադրել ֆյուրերի աշխատասենյակում՝ Ռաստենբուրգում (Արլ. Պրուսիա), սակայն Հիտլերը ողջ է մնացել: Դավադրության մյուս կազմակերպիչների հետ մահապատժի է ենթարկվել:

«ՇՏԵՄԱԲԱՆ», ազգ., քաղ., գր., կրթ. ամսագիր (1821–23, Կալկաթա): Օճանասփյուռ (օճան՝ օգնություն, նպաստ) ընկ–յան պաշտոնաթերթ: Խմբ.՝ Մարտիրոս Մկրտչյան (Շիրազեցի):

«ՇՏԵՄԱՐԱՆ ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԵԱՅ», գր., պատմ., ազգագր. ամսագիր (1839–42, 1844–46, Զմյուռնիա, 1854, Կ. Պոլիս՝ հայ., հայատառ թուրք.):

ՇՏԵՄԵՆԿՈ Սերգեյ Մատվեևիչ (1907–1976), ռուս. բանակի գեն. (1968): ՀՄՊ–ի ժամանակ՝ 1943–ից՝ ԳՇ օպերատիվ կառավարման պետ, 1946–ից՝ ԳՇ պետի տեղակալ, 1948–52–ին՝ պետ, 1962–ից՝ ցամաք. զորքերի ԳՇ պետ, 1968–ից՝ ԳՇ պետի 1–ին տեղակալ և Վարշավայի պայմանագրի անդամ երկրների ՋՈՒ շտաբի պետ: Հեղինակ է «Գլխավոր շտաբը պատերազմի տարիներին» (մաս 1, 2, 1968, 1973), «Խորհրդային բանակի ազատագրական առաքելությունը» (1975) և այլ աշխ–ների:

ՇՏԵՅԳԵՐ (Steiger) Օտտո (1909–2005), շվեյցարացի գերմանագիր գրող: Հեղինակ է «Հարգարժան մարդու դիմանկարը» (1952), «Տարին՝ տասնմեկ ամսում» (1962) սոցիալ–քննադատ. վեպերի, դեռահասների դաստիարակության թեմաներով «Բռնկը գողին» (1974), «Անհասության քննություն» (1984) վիպակների, նաև պատմվածքների, մանկ. գրքերի:

ՇՏԵՌՆ (Shtern) Գրիգորի Միխայլովիչ (1900–1941), խորհրդ. զորահրամ., գեներալ–գնդ. (1940): ԽՄ հերոս (1939): 1937–38–ին՝ Իսպանիայի հանրապետ. կառ–յանն առընթեր գլխ. ռազմ. խորհրդական: 1938–41–ին՝ 1–ին Հեռավորարլ. բանակի և Հեռավո–

րարլ. ռազմաճակատի հրամ., 1941-ին՝ ՀՕՊ-ի կառավարման պետ: Բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ՇՏԵՌՆ (Stern) Լինա Սոլոմոնովնա (1878–1968), հրեա ֆիզիոլոգ: ԽՍՀՄ ԳԱ (1939) և ԲԳԱ (1944) ակադ.: Հետազոտել է ֆիզիոլոգ. կենսընթացների քիմ. և ֆիզքիմ. հիմունքները և հումորալ կարգավորումը: Զարգացրել է օրգանիզմի ներքին միջավայրի կայունության և արյունաուղեղ. պատնեշի վերաբերյալ պատկերացումները: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943):

ՇՏԵՌՆ Վիլյամ (1871–1938), հրեա հոգեբան և փիլ.: Տարբերական հոգեբ–յան հիմնադիրներից, ներմուծել է «բանականության գործակից» հասկացությունը: Աշխ–ները վերաբերում են մանկան և կիրառ. (դատ. ևն) հոգեբ–յանը: Առաջիններից է կիրառել թեստերը: «Քննադատական պերսոնալիզմի» («Անհատը և իրը», հ. 1–3, 1906–24) համակարգում աշխարհը դիտել է որպես տարբեր մակարդակների «անհատների» աստիճանակարգություն (բյուրեղից մինչև մարդ):

ՇՏԵՌՆ Օտտո (1888–1969), գերմանացի ֆիզիկոս: 1933-ից՝ ԱՄՆ–ում: Աշակել է մոլ. փնջերի մեթոդը, չափել (1920) գազի մոլ–ների ջերմ. շարժման արագությունը (Շ–ի փորձ), ապացուցել (1922) տարած. քվանտացման գոյությունը (*Շտեռն–Գեռլախի փորձ*): Հայտնագործել է (1929) ատոմների և մոլ–ների դիֆրակցիան, չափել (1933, Օ. *Ֆրիշի* հետ) պրոտոնի մագնիս. մոմենտը: Նորելյան մրց. (1943):

ՇՏԵՌՆԲԵՐԳ (Sternberg) Զոզեֆ ֆոն (1894–1969), ամերիկ. կինոռի ավստրիացի ռեժ.: Համաշխ. ճանաչման է հասել «Երկնագույն հրեշտակ» (1930, ըստ Թ. Մաննի «Պրոֆեսոր Ունրատ» վեպի, Գերմանիա) ֆիլմով: Նկարահանել է նաև «Ընդհատակ» (1927), «Շիկահեր Վեներան» (1932), «Շանհայի ճեպընթացը» (1932), «Ոճիր և պատիժ» (1935, ըստ Ֆ. Մ. Դոստոևսկու վեպի) և այլ ֆիլմեր:

ՇՏԵՌՆ–ԳԵՌԼԱԽԻ ՓՈՐՁ, ապացուցել է ատոմի մագնիս. մոմենտի գոյությունը, որը որոշակիորեն կողմնորոշված է արտաքին մագնիս. դաշտում: Արծաթի (Ag) ատոմների նեղ փունջը, անցնելով անհամասեռ մագնիս. դաշտի տիրույթով, բաժանվում է 2 փնջի, ինչը և հաստատում է ատոմի մագնիս. մոմենտի քվանտացման գոյությունը: 1922-ին իրականացրել են Օ. *Շտեռնը* և Վ. *Գեռլախը*:

ՇՏԵՖԱՆ III Մեծ (ռում.՝ Stefan cel Maresi Stânt, ծ. թ. անհտ–1504), Մոլդովայի հոսպոդար՝ 1457-ից: Վարել է կենտրոնաձիգ քաղ–յուն: Հաղթել է Հունգարիայի (1467) և Լեհաստանի (1497) բանակներին: 1475-ին ջախջախել է թուրք. բանակը, սակայն 1476-ին պարտություն է կրել և 1487-ին ճանաչել թուրք. գերիշխանությունը:

ՇՏԵՖԵՆԵՍԿՈՒ (Stephănescu) Ջորջե (1843–1925), ռումին կոմպոզիտոր, դիրիժոր: Ռում. կոմպոզիտոր. և օպեր. մեներգեցողության դպրոցների հիմնադիրներից: 1877–90-ին Բուխարեստի ազգ. թատրոնի դիրիժոր: Հեղինակ է օպերետների, ռում. առաջին սիմֆոնիայի (1869), կամեր–գործիք., վոկալ և այլ երկերի:

ՇՏՅՈՒՐԳԿ (Stürgkh) Կառլ ֆոն (1859–1916), կոմս, Ավստրիայի Կառ–յան ղեկ.՝ 1911–16-ին: Սպանել է Ֆ. *Ադլերը*:

ՇՏՈԳԱՐԵՆԿՈ Անդրեյ Յակովլևիչ (1902–1992), ուկրաինացի կոմպոզիտոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1972): Սոց. աշխ. հերոս (1982): Հեղինակ է «Իմ Ուկրաինա» կանտատ–սիմֆոնիայի, «Լեսյա Ուկրաինկայի հիշատակին» սիմֆ. սյուիտի, սիմֆոնիաների («Կիևյան սիմֆոնիա» ևն) ևն:

ԽՍՀՄ (1946, 1952), Ուկր. ԽՍՀ (1974) Պետ. մրց–ներ:

ՇՏՈԼՑ (Stolz) Ռոբերտ (1880–1975), ավստրիացի կոմպոզիտոր, դիրիժոր: Ֆոքստրոտի ժանրի առաջին եվրոպացի կոմպոզիտորը: Հայտնի է օպերետներով (շուրջ 60), հեղինակ է նաև 2000-ից ավելի երգերի (հիմնականում՝ կաբարեի համար), կինոերաժշտության ևն:

ՇՏՈԿՈԼՈՎ Բորիս Տիմոֆեևիչ (1930–2005), ռուս երգիչ (բաս): ԽՍՀՄ ժող. արտիստ (1966): 1959-ից՝ Լենինգրադի ՕԲԹ–ի (այժմ՝ Մարիինյան թատրոն) մեներգիչ (Մեֆիստոֆել՝ Շ. Գունոյի «Ֆաուստ», ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1976, 1981):

ՇՏՈՒՅԽ (Streich) Ռիտա (1920–1987), գերմանացի երգչուհի (սոպրանո): Հանդես է եկել աշխարհի նշանավոր օպեր. թատրոններում: Վ. Ա. Մոցարտի, Ռ. Շտրաուսի օպերաների կոլորատուր. դերերգերի լավագույն մեկնաբաններից:

ՇՏՐԱՄՄԱՆ (Strassmann) Ֆրից Ֆրիդրիխ Վիլհելմ (1902–1980), գերմանացի քիմիկոս, ֆիզիկոս: Աշխ–ները վերաբերում են միջուկ. քիմիային, ճառագայթաքիմիային: Օ. *Հանի* հետ բացահայտել է (1939) ուրանի միջուկների տրոհումը նեյտրոններով ռմբակոծելիս: Է. Ֆերմիի անվ. մրց. (1966):

ՇՏՐԱՈՒԽ Սաքսիմ Սաքսիմովիչ (1900–1974), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1965): 1932-ից՝ Մոսկվայի Հեղյան (այժմ՝ Վ. Մ. Մայակովսկու անվ.) թատրոնի դերասան (Պորեդոնոսիկով, Պրիսիպկին՝ Վ. Մ. Մայակովսկու «Բաղնիք», «Փայտոջիլ», ևն): Ստեղծել է Վ. Ի. Լենինի կերպարը «Հրացանավոր մարդը», «Պատմվածքներ Լենինի մասին», «Լենինը Լեհաստանում» ֆիլմերում:

ԽՍՀՄ Պետ. (1949, 1951-ին՝ կրկնակի), Լենինյան (1959) մրց–ներ:

ՇՏՐԱՈՒԽԻ ԱՆԱՊԱՏԱՅԻՆ ՄՈՂԵՍԻԿ (Eremias strauchi), *իսկական մողեսների* ընտանիքի անապատ. մողեսիկների սեռի մողեսիկ: Մարմնի երկ.՝ 3–8 *սմ*, պոչը՝ կրկնակի երկար: ՀՀ–ում տարածված է Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերում և Երևանի շրջակայքում: Կարգավորում է միջատների թվաքանակը: Օգտագործում են ԳՀ նպատակներով:

ՇՏՐԱՈՒՍ (Strauβ) Դավիդ Ֆրիդրիխ (1808–1874), գերմանացի աստվածաբան և երիտհեգելական փիլ.: «Հիսուսի կյանքը» (հ. 1–2, 1835–36) աշխ–յան մեջ հերքել է Ավետարանի հավաստիությունը, Հիսուսին համարել է պատմ. անհատ: Հետագայում հարել է բնապաշտությանը:

ՇՏՐԱՈՒՍ Յոհան (Շտրաուս–հայր, 1804–1849), ավստրիացի ջութակահար, դիրիժոր, կոմպոզիտոր: Վիեննա. վալսի հիմնադիր (Յ. *Լանների* հետ): 1825-ին ստեղծել է սեփ. նվագախումբ: Հեղինակ է շուրջ 250 պիեսների (152 վալս՝ «Դանուբյան երգեր», «Լոռելայ» ևն), կադրիլների, գալոպների, քայլերգերի, պոլկաների ևն: Որդիները՝ **Յոզեֆ** (1827–1870), **Էդուարդ** (1835–1916), **Յոհան** Շ–ները նույնպես կոմպոզիտորներ և դիրիժորներ են:

ՇՏՐԱՈՒՍ Յոհան (Շտրաուս–որդի, 1825–1899), ավստրիացի կոմպոզիտոր, դիրիժոր, ջութակահար: Յ. *Շտրաուսի* որդին: Հռչակվել է «վալսի արքա»: 1844-ին հիմնադրել է սեփ. նվագախումբ, հանդես եկել Եվրոպայում և Ամերիկայում: 1856–72-ին (ընդմիջումներով) ղեկավարել է Պավլովսկի համերգաշրջանները: Ստեղծել է վիեննա. վալսի («Հիսաքանչ երկնագույն Դանուբի վրա», 1867, «Վիեննական անտառի հեքիաթները»,1868, «Գինին, կինն ու երգը», 1869, «Գարնանային ձայներ», 1883, ևն), վիեննա. օպերետի («Չղջիկ», 1874, «Գնչու բարոնը», 1885) դաս. տիպ: Հեղինակ է շուրջ 500 պար. երաժշտ. գործերի (պոլկաներ, գալոպներ, մեղեդիներ ևն):

ՇՏՐԱՈՒԽ Ռիխարդ (1864–1949), գերմանացի կոմպոզիտոր, դիրիժոր: Բեռլինի Արվ–ի ակադ–ի անդամ (1909): 1898–1918-ին՝ Բեռլինի, 1919–24-ին՝ Վիեննայի օպեր. թատրոնների գլխ. դիրիժոր: Հեղինակ է «Դոն Ժուան», «Սահ և պայծառացում» (երկուսն էլ՝ 1889), «Թիլ Ուլենշպիգելի ուրախ արարքները» (1895), «Այսպես խոսեց Զրադաշտը» (1896), նաև «Սալոմե» (1905), «Էլեկտրա» (1908), «Վարդի ասպետը» (1910), «Արիադնան Նիքսոսում» (1912) օպերաների, «Մետամորֆոզներ»–ի (1946)՝ լար. անսամբլի համար, նաև կոնցերտների, սոնատների, երգերի ևն:

ՇՏՐԱՈՒԽ Ֆրանց Յոզեֆ (1915–1988), ԳԴՀ պետ. գործիչ, ՔՄՄ նախագահ՝ 1961-ից, Բավարիայի վարչապետ՝ 1978-ից: 1953–62 և 1966–69-ին՝ դաշն. կառ–յան նախարար:

ՇՏՐԵԶԵՄԱՆ (Stresemann) Գուստավ (1878–1929), Գերմանիայի ռայխսկանցլեր՝ 1923-ի օգոստ–նոյեմբ–ին, ԱԳ նախարար՝ 1923-ի օգոստ–ին, Գերմանիայի ազգ. կուս–յան հիմնադիր ղեկ–ներից (1918):

Խաղաղության Նոբելյան մրց. (1926):

ՇՏՐԵՅԿԲՐԵԽԵՐՆԵՐ (գերմ., եզ. թիվ՝ Streikbrecher), **գործադուլաբեկ**, անձինք, որոնց ձեռնարկատերերն օգտագործում էին գործադուլավորների փոխարեն աշխատելու համար:

ՇՏՐԻՏՄԱՏԵՐ (Strittmatter) Էրվին (1912–1994), գերմանացի գրող: Կարճ պատմվածքի վարպետ («Կապույտ սոխակը կամ Այսպես է այն սկսվում», 1972, ևն): Հեղինակ է նաև չափածո պիեսների, «Տինկո» (1954), «Օլե Բինկոպ» (1963), «Կրպակ» (մաս 1–3, 1983–92) հոգեբ. վեպերի, «Հրաշագործը» (հ. 1–3, 1957–80) վեպ–դյուցազներգության, «Կերպարանափոխությունից առաջ» (1995) ինքնակենսագր. գրքի:

ՇՏՐՅՈՒՄՊԵԼ (Strumpell) Ադոլֆ ֆոն (1853–1925), գերմանացի նյարդախտաբան և թերապևտ: Նկարագրել է ջղաձգ. ընտանեկան լուծանքը, մի շարք նյարդաբան. ախտանշաններ և համախտանիշներ, որոնք կոչվել են իր անունով: Մասնակցել է Վ. Ի. Լենինի բուժմանը (1923):

ՇՏՐՈՀԱՅՄ (Stroheim) Էրիխ ֆոն (Շտրոհայմ ֆոն Նորդենվալդ, 1885–1957), ամերիկ. կինոռի ավստրիացի ռեժ., դերասան: 1914-ից Հոլիվուդում նկարահանել է «Կույր ամուսինները» (1919), «Կարուսել» (1923), «Ընչաքաղցություն» (1924), «Ուրախ այրին» (1925), «Կելլի թագուհին» (1928) և այլ ֆիլմեր: Նկարահանվել է «Մեծ պատրանք», «Ձիբրալթար» (խորհրդ. էկրանին՝ «Գաղտնի գործակալության ցանցերը», 1938), «Հինգ դամբարան Կահիրեի ճանապարհին», 1943) և այլ ֆիլմերում:

ՇՏՈՒՄՊՖ (Stumpf) Կառլ (1848–1936), գերմանացի հոգեբան, փիլ., երաժշտագետ: Հեղինակ է «Տարածական պատկերացումների հոգեբանական ծագման

մասին» (1873), «Երաժշտական ընկալումների հոգեբանություն» (հ. 1, 2, 1883, 1890) և այլ աշխ-ների:

ՇՏՈՒՏԳԱՐԴ (Stuttgart), ք. Գերմանիայում՝ Նեքար գետի ափին, Բադեն Վյուրտեմբերգ երկրի վարչ. կենտրոնը: Բն.՝ 613 հգ. (արվարձաններով՝ 2,3 մլն, 2012): Տրանսպորտ. հանգույց է, ունի օդանավակայան, մետրոպոլիտեն: Բարձր տեխնոլոգ., ֆինանսաբանկ., ապահովագր. և գործարար կենտրոն է: Հայտնի է որպես ավտոմեքենաշինության բնօրրան: Շ-ում է «Դայմլեր Բենց», «Պորշե» ընկ-ների կենտր. գրասենյակները: Հիմնադրվել է շուրջ 950-ին, XIV դ.–1918-ը եղել է Վյուրտեմբերգի մայրաքաղաքը: Ճարտ. հուշարձաններից են գոթ. ոճի ծխ. (XII–XV դդ.) և հոսպիտալ. (XV դ.) եկեղեցիները, Ֆեյտի կապելլան (XIV դ.), Հին ռատուշան (XV դ.), Վերածննդի շրջանի Հին պալատը և Հին դիվանատունը (XVI դ.), բարոկկո ոճի «Սոլիտյուդ» պալատը:

ՇՏՈՒՐՄ (Sturm) Ժակ Շառլ Ֆրանսուա (1803–1855), ֆրանսիացի մաթեմատիկոս: Փարիզի ԳԱ (1836), Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. (1936) անդամ: Աշխ-ները վերաբերում են մաթ. ֆիզիկայի հավասարումների եզրային խնդիրներին օպտիկայում և մեխանիկայում:

ՇՐԱՅԵՐ (Schreier) Պետեր (ծ. 1935), գերմանացի երգիչ (տենոր): 1963-ից՝ Գերմանիայի պետ. օպերայի մեներգիչ (Տամինո՝ Վ. Ա. Մոցարտի «Կախարդական սրինգ», Լենսկի՝ Պ. Ի Չայկովսկու «Եվգենի Օնեգին», ևն): ԳԴեմՀ Ազգ. (1972, 1986), Ռ. Շումանի (1969), Է. ֆոն Սիմենսի (1988) մրց-ներ:

ՇՐԴԱՆ, որոճող կենդանիների ստամոքսի վերջին՝ 4-րդ բաժինը. համապատասխանում է կաթնասունների մեծամասնության պարզ միախցիկ ստամոքսին: Միանում է հազարաթերթիկի և 12-մատնյա աղիի հետ: Մնունդը Շ-ում մարսվում է ստամոքսահյութի ազդեցության տակ: Շ-ից պատրաստում են մակարդիչ-մերաններ:

ՇՐԵԹԻԵՆ (Chrétien) Ժան-Ժակ Ժոզեֆ (ծ. 1934), Կանադայի վարչապետ՝ 1993–2003-ին: 1990–2003-ին՝ Կանադայի լեյբորիստ. կուս-յան ղեկ.:

ՇՐԵՇ (Eremurus), **շրեստ, օշին**, թաղաղուազգիների ընտանիքի կոճղարմատավոր խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 50 տեսակ, ՀՀ-ում՝ 1՝ Գեղարքունիքի, Արագածոտնի, Սյունիքի մարզերում: Մեղրատու է և գեղազարդիչ:

ՇՐԹՀԱՐՄՈՆ, փողավոր լեզվակավոր երաժշտ. գործիք: Տարածված է Կենտր. Եվրոպայում, Ամերիկայում և այլուր:

ՇՐԹՆԱԲՈՐԲ, խեյլիտ (հուն.՝ cheilos – շրթունք), շրթունքի կարմիր երիզի, լորձաթաղանթի և մաշկի բորբոքում:

ՇՐԹՆՈՏԱՆԻՆԵՐ (Chilopoda), բազմոտանիների խմբի հոդվածոտանիների դաս: Երկ.՝ մի քանի *մմ*-ից 25–30 *սմ*: Մարմնի գրեթե բոլոր հատվածների վրա ունեն 1 զույգ վերջույթներ: Հայտնի է մոտ 3 հգ. տեսակ՝ լայնորեն տարածված, հատկապես բազմաքանակ են արևադարձներում: Գիշատիչ են: Ունեն թունավոր գեղձեր, որոնց ծորանները բացվում են ծնոտ. ոտքերի վրա:

ՇՐԹՈՒՆՔՆԵՐ, 1. մարդու և կաթնասունների բերանի բոլորաձև մկանների շարժուն թեքերը, որոնք դրսից ծածկված են մաշկով, ներսից՝ լորձաթաղանթով: 2. Չկների, երկկենցաղների և սողունների բերանի բացվածքը շրջապատող անշարժ մաշկ. ծալքեր: Կտուցի զարգացման ժամանակ Շ. բացակայում են (կրիաներ, թռչուններ), հասուն կոյանցքավոր կաթնասուններ): 3. Որոշ կաթնասունների էգերի և կանանց արտաքին սեռ. օրգանների եզրամասերը:

ՇՐԻ ԼԱՆԿԱ, Շրի Լանկայի Ժողովրդավարական Սոցիալիստական Հանրապետություն (մինչև 1972-ը՝ Ցեյլոն), կղզային պետություն Հվ. Ասիայում՝ Հնդ. օվկ-ի Շրի Լանկա կղզում: Տարածքը՝ 65,6 հգ. *կմ*^{2}, բն.՝ 20,3 մլն (2013): Մայրաքաղաքը՝ Շրի Ջայավարդենեպուրա Կոտե (փաստացի՝ ***Կոլոմբո***): Պետ. լեզուները՝ սինհալերեն, թամիլերեն: Կառավարման ձևը՝ խառը նախագահահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Բաժանված է 9 վարչ. պրովինցիաների, որոնք կազմված են 29 օկրուգներից: Հավատացյալների մեծ մասը բուդդայական է, կան հինդուականներ և մահմեդականներ: Անդամակցում է ՄԱԿ-ին, ԱոտՀԿ-ին ևն: Զարգացող երկիր է, ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 4,5 հգ. Ա$\text{Մ}^\text{Ն}$ դոլար է (2009): Արտահանում է թեյ, բնական կաուչուկ, թանկարժեք քարեր, դեղորայք, մրգեր ևն, ներմուծում՝ նավթամթերք, մեքենաներ և սարքավորումներ, սննդամթերք, մետաղներ, հագուստ ևն: Դրամ. միավորը՝ շրիլանկայական ռուփի:

Մ. թ. ա. V դ-ում Հնդկաստանից Շ. Լ. են գաղթել հնդ. ցեղեր: Եկվորները և բնիկները միաձուլվել են, սկսել է ձևավորվել սինհալ. ժողգ-ը: Սինհալները հիմնել են վաղ ստրկատիր. Ռաջարատա և Ռոհունա պետությունները: Մ. թ. ա. III դ-ում տարածվել է բուդդայականություն: Մ. թ. V–VI դդ-ից մինչև XV դ. կղզում տիրապետության համար պայքարել են սինհալները և Հվ. Հնդկաստանից Շ. Լ. եկած թամիլները: XV դ-ում կազմավորվել են 3 խոշոր պետություններ՝ սինհալ. Կոտտե (արմ-ում և հվ-արմ-ում) և Կանդի (կենտր. շրջաններում), թամիլ. Ջաֆնա (հս-ում՝ Ջաֆնա թ-կղզում): 1521–1658-ին կղզու զգալի մասը պորտուգալացիների ձեռքին էր: 1795–96-ին Մեծ Բրիտանիան զավթել է կղզու մի մասը և միացրել Մադրասի նախագահությանը: 1802-ին անգլիացիներին ենթակա շրջանները դարձել են առանձին գաղութ՝ Ցեյլոն անունով: 1815-ին անգլիացիները գրավել են վերջին պետությունը՝ Կանդին: ԵՀՊ-ից հետո հակագաղութ. շարժումը հարկադրել է Մեծ Բրիտանիային անկախություն տալ կղզուն (1948-ի փետր. 4)՝ դոմինիոնի իրավունքով: Իշխանության գլուխ է անցել 1946-ին հիմնված Միացյալ ազգ. կուս-յունը: Երկրում վերացվել են բոլոր արտ. ռազմ. հենակետերը (1957), հայտարարվել է երկրի՝ որևէ դաշինքի չմիանալու սկզբունքի մասին ևն: 1972-ին Ցեյլոնը հռչակվել է Շ. Լ.-ի Հանրապետություն: 1980-ական թթ-ից զինված բախումներ են տեղի ունենում թամիլների և սինհալների միջև: 2009-ին Շ. Լ.-ի զինված ուժերը վճռորոշ պարտության են մատնել Թամիլյան ազատագրության միացյալ ճակատին, որը ձգտում էր երկրի հս-ում ստեղծել անկախ պետություն: 1977–94, 2001–04 և 2015-ից իշխանության ղեկին Միացյալ ազգ. կուս-յունն է, 1994–2001 և 2004–10-ին՝ Շ. Լ.-ի Ազատության կուս-յան գլխավորած դաշինքը:

ՇՐԻՀԱՐԻԿՈՏԱ, արգելափակ կղզի Բենգալյան ծոցի ափին՝ Հնդկաստանի Անդհրա Պրադեշ նահանգ-ում: Կղզում է երկրի միակ՝ Սատիշ Դհավանի անվ. տիեզերակայանը: 1-ին տիեզ. թռիչքն իրականացվել է 1979-ին:

ՇՐԻՎՊՈՐՏ (Shreveport), ք. Ա$\text{Մ}^\text{Ն}$ Լուիզիանայի նահանգ-ում: Բն.՝ 204 հգ. (արվարձաններով՝ 400 հգ., 2012): Լուիզիանա և հարևան Արկանզաս ու Տեխաս նահանգ-ների առևտրաֆին. կենտրոնը: Ունի համալսարաններ:

ՇՐԻՖԵՐ (Schriffer) Ջոն Ռոբերտ (ծ. 1931), ամերիկացի ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ արտ. թղթ. անդամ (1988): Աշխ-ները վերաբերում են պինդ մարմնի ֆիզիկային, ցածր ջերմաստիճաններին, մագնիսականությանը, մեծաթիվ մարմինների խնդրին: Գերհաղորդականության միկրոսկոպիկ տեսության հեղինակներից է (1957):

Նոբելյան մրց. (1972, Ջ. ***Բարդինի*** և ***Լ. Կուպերի*** հետ):

ՇՐՅՈԴԵՐ (Schrőder) Էռնստ (1841–1902), գերմանացի մաթեմատիկոս և տրամաբան: Աշխ-ները վերաբերում են տրամաբ-յան հանրահաշվին (դասերի հանրահաշվին) և հարաբերությունների տրամաբ-յանը: Իրականացրել է ալգորիթմների և հաշվի ընդհ. տեսության կառուցման առաջին փորձը:

ՇՐՅՈԴԵՐ Յոհան Յոախիմ (1680–1756), գերմանացի արևելագետ-հայագետ: Հայ-ի գիտելիքները կատարելագործել է Թովմա Գողթանցու և Ղուկաս Նուրիջանյանի (Վանանդեցի) մոտ: 1712–56-ին վարել է Մարբուրգի համալսարանի հայագիտ-յան բաժինը: «Արամեան լեզուին գանձ» (1711) աշխ-յան մեջ տեղեկություններ է հաղորդել հայերի և հայ-ի մասին, գրել է գրաբարի և աշխարհաբարի քերակ-ը, ուսումնասիրել ինչյունաբանությունը, ուղղագրությունը, կատարել ստուգաբանություններ, անդրադարձել հայ-ի բարբառներին: Շ. Հայկ Նահապետին համարել է հայերի նախահայրը և անվանադիր նախնին: Հայկ., երբ. և հունա-լատ. սկզբնաղբյուրների քննն. վերլուծությամբ ընդհ. գծերով ներկայացրել է հայոց պատմության հիմն. իրադարձությունները:

ՇՐՅՈԴԵՐ-ԴԵՎՐԻԵՆՏ (Schröder-Devrient) Վիլհելմինա (1804–1860), գերմանացի երգչուհի (սոպրանո): 1823–47-ին՝ Դրեզդենի օպեր. թատրոնի մեներգչուհի (Պամինա՝ Վ. Ա. Մոցարտի «Կախարդական սրինգ», ևն), ապա՝ կամեր. երգչուհի: Հանդես է եկել նաև Լ. վան Բեթհովենի, Կ. Մ. Վեբերի, Ռ. Վագների օպերաներում:

ՇՐՅՈԴԻՆԳԵՐ (Schrödinger) Էրվին (1887–1961), ավստրիացի ֆիզիկոս-տեսաբան, ***քվանտային մեխանիկայի*** հիմնադիրներից: ԽՍՀՄ ԳԱ արտ. թղթ. (1928), պատվ. (1934) անդամ: Ստեղծել է ալիք. մեխանիկան, ձևակերպել նրա հիմն. հավասարումը (***Շրյոդինգերի հավասարում***), ապացուցել ալիք. մեխանիկայի և մատրիցային մեխանիկայի նույնականությունը:

Նոբելյան մրց. (1933, Պ. Ա. Մ. ***Դիրակի*** հետ):

ՇՐՅՈԴԻՆԳԵՐԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄ, ոչ ռելյատիվիստ. քվանտ. մեխանիկայի հիմն. դինամիկ. հավասարումը. հնարավորություն է տալիս որոշելու համակարգի հնարավոր վիճակները, նաև վիճակի փոփոխությունը ժամանակի ընթացքում: Ձևակերպել է Է. ***Շրյոդինգերը*** 1926-ին:

ՇՐՈՊՇԻՐՅԱՆ ՈՋԽԱՐԻ ՑԵՂ, կիսանրբագեղմ, կարճաբուրդ, մսաբրդատու ոչխարներ: Ստացվել է XIX դ–ի 1–ին կեսին Մեծ Բրիտանիայում: Անեղջյուր են: Խոյերի կ. զ.՝ 80–120 *կգ*, մաքիներինը՝ 70–90 *կգ*: Բուծում են Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ–ում, Նոր Զելանդիայում, Ավստրալիայում ևն:

ՇՐՋԱԴԻՏԱԿ, 1. ապաստարաններից (խրամատներ, թաքստոցներ ևն), տանկերից, սուզանավերից և այլ օբյեկտներից դիտարկման օպտիկ. սարք: Շ–ի միջոցով չափում են տեղանքի հորիզոն. և ուղղաձիգ անկյունները և որոշում մինչև դիտարկվող օբյեկտը եղած հեռ–յունը: 2. Լուսանկարչ. օբյեկտիվ՝ բաղկացած 2 ուռուցիկ–գոգավոր ոսպնյակներից, որոնք համաչափ են դրանց միջև դրված դիաֆրագմայի հարթության նկատմամբ:


ՇՐՋԱԴԻՏԱԿԱՅԻՆ ԱԼԵՅԻՐ, 2 առանձին ալեցիրներից կազմված հայելային բարդ ալեցիր: Ճառագայթում և վերաճառագայթում է, երբ տեղակայված է, համապատասխանաբար, կայմի կամ աշտարակի հիմքում կամ գագաթին: Կիրառվում է հիմնականում ռադիոռելեական կապի գծերում:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԻԳԻԵՆԱՅԻ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԹՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՀԻ ՀՀ ԱՆ, կազմավորվել է ճառագայթակենսբ–յան բաժանմունքի պեստիցիդների հիգիենայի ու թունաբանության լաբորատորիայի (1968) հիման վրա: Հիմն. խնդիրներն են՝ քիմ. նյութերով շրջակա միջավայրի աղտոտման և դրա հետ կապված ազգաբնակչության առողջ. վիճակի բարելավման առողջապ. պետ. համալիր միջոցառումների կազմակերպումը, պեստիցիդների, բույսերի աճման խթանիչների, հանք. պարարտանյութերի և պոլիմերների օգտագործման հիգիենային գնահատումը:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, շրջակա միջավայրի վրա մարդու գործունեության բացաս. հետևանքների կանխորոշման, նվազեցման, սահմանված պահանջներին համապատասխան բնակչության առողջության, բնականոն կենսագործունեության և բարեկեցության ապահովման միջոցառումների համալիր:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ, հայէկոմոնիթորինգ, կազմյուն ՀՀ ԲՆ կազմում: Ստեղծվել է 2003–ին: Հիմն. խնդիրներն են՝ էկոլոգ. անվտանգության ապահովման պետ. քաղ–յան և ռազմավարության մշակումն ու իրականացումը, բնության պահպանության և բնական պաշարների թույլատրելի օգտագործման ապահովման նպատակով շրջակա միջավայրի վրա մարդահարույց ներգործության ու դրա հետևանքների մշտադիտարկման և փորձաքննության կազմակերպումը:

ՇՐՋԱՆ, հարթության մաս, որը սահմանափակված է *շրջանագծով* և պարփակում է նրա կենտրոնը: Շ–ի մակերեսը՝ $S = \varpi R^2$, որտեղ R–ը շրջանագծի շառավիղն է, իսկ $\varpi = 3{,}14159\ldots$՝ շրջանագծի երկ–յան հարաբերությունը նրա տրամագծին:



ՇՐՋԱՆԱԳԻԾ, փակ հարթ կոր, որի բոլոր կետերը հավասարահեռ են նրա O կենտրոնից (նկ.): O կենտրոնը Շ–ի որևէ կետի հետ միացնող R հատվածը կոչվում է շառավիղ: Շ–ի 2 ցանկացած կետեր իրար միացնող AB ուղիղը կոչվում է լար, իսկ O կետով անցնող CD լարը՝ տրամագիծ: Շ–ի երկ–յան հարաբերությունը նրա տրամագծին տրասցենդենտ թիվ է՝ $\varpi = 3{,}14159\ldots$: Շրջանագծի երկ–յունը $2\varpi R$ է, իսկ դրանով սահմանափակված *շրջանի* մակերեսը՝ ϖR^2:

ՇՐՋԱՆԱԿ, հենոց, 1. հարթ կամ տարած. ձողային համակարգ, որի տարրերը (կանգնակներ, պարզունակներ, դիմկալներ) բոլոր կամ որոշ հանգույցներում կոշտ միացած են միմյանց: Մետաղե, երկաթբետոնե և փայտե Շ–ներն օգտագործում են որպես շենքերի, կամուրջների, էստակադների և այլ կառույցների կրող կառուցվածքներ: 2. Մեքենայի կամ սարքավորման կրող մասը:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԹԵՐԹԵՐ, ՀԽՍՀ շրջաններում լույս ընծայված պարբ–ներ՝ որպես շրջկոմների և ժողպատգմ–ների շրջխորհրդի պաշտոնաթերթեր: Ծանոթացրել են տեղ. իշխանությունների և կուս. մարմինների գործունեությանը, շրջանի կրթամշակութ. կյանքին, տպագրել տեղի հեղինակների ստեղծագործություններ: 1990–91–ից (ՀՀ անկախացումից հետո) Շ. թ–ի մեծ մասն այլևս լույս չի տեսել, մի քանիսն էլ վերահրատարակվում են որպես մարզային կամ անկախ պարբ–ներ:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՇԱՐԺԸՆԹԱՑ, ցիկլային շարժընթաց, թերմոդինամիկ. շարժընթացների համախումբ, որոնց արդյունքում բանող մարմինը (օր.՝ գազը՝ ջերմ. մեքենայում), անցնելով միջանկյալ վիճակները, վերադառնում է նախն. վիճակի: Տես նաև *Կառնոյի ցիկլ*:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ, հակադարձ *եռանկյունաչափական ֆունկցիաներ*, որոնք լուծում են այնպիսի աղեղ (անկյուն, թիվ) գտնելու խնդիրը, որի եռանկյունաչափ. ֆունկցիան հավասար է տրված թվին: 6 եռանկյունաչափ. ֆունկցիաներին (sinx, cosx, tgx, ctgx, secx, cocecx) համապատասխանում են 6 Շ. ֆ.՝ Arcsinx, Arccosx, Arctgx, Arcctgx, Arcsecx, Arccosecx: Օր.՝ Arcsina–ն այնպիսի X անկյուն է, որ sinx = a. այսինքն՝ Arcsina–ն Sinx = a հավասարման լուծումն է:

ՇՐՋԱՆԱՌՈՒ ԿԱՊԻՏԱԼ, ծախսումներ հումքի, նյութերի և աշխատուժի վրա, որոնք ամբողջովին մտնում են արտադրանքի ինքնարժեքի մեջ և նրանց իրացումից հետո ձևափոխվում են դրամաձևի:

ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ ու ընթացիկ ակտիվներ, ֆին. պաշարներ և օբյեկտներ, որոնց օգտագործումն իրականացվում է վերարտադրության մեկ փուլի շրջանակներում կամ համեմատաբար կարճ ժամանակի ընթացքում: Առանձնացնում են ապրանքանյութ. արժեքներ և դրամ. միջոցներ: Ըստ կազմավորման աղբյուրների՝ լինում են սեփ. և փոխառու Շ. մ.:

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ, շրջանառության ոլորտում կապիտալի կամ ձեռն–յան միջոցների լինելու տևողությունը: Ընդգրկում է արտադր. միջոցներ ձեռք բերելու, մատակարարների հետ հաշվարկների և պատրաստի արտադրանքը պահեստում պահելու, սպառողին հասցնելու (փոխադրելու), իրացնելու և փողը բանկում ձեռն–յան հաշվին փոխանցելու ժամանակը:

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿ, գործունեության համար պետ. բյուջե վճարվող՝ ավելացված արժեքի հարկին և (կամ) շահութահարկին փոխարինող հարկ: ՀՀ–ում վճարվում է հարկվող օբյեկտի նկատմամբ սահմանված դրույքաչափերով:


«ՇՐՋԱՊԱՏ», հաս–քաղ., տեղեկատվ. շաբաթաթերթ (2004–ից, Գյումրի): Տնօրեն–խմբ.՝ Եպրաքսյա Մեխակյան:

ՇՐՋԱՓԱԿՈՒՄ, 1. միջոցառումների համակարգ, որով խոչընդոտվում են պետության արտաքին տնտ., քաղ. կապերը՝ նրան որոշակի գործողություններից զերծ պահելու կամ որոշակի գործողությունների հարկադրելու նպատակով: 2. Ռազմ. Շ., օբյեկտի (բանակների խմբավորում, քաղաք, տարածաշրջան, պետություն ևն) մեկուսացում՝ ցամաքում, օդում և ծովում՝ նրա արտաքին կապերի խափանման միջոցով: Անկախացումից և ԼՂՀ հռչակումից հետո Ադրբեջանը և Թուրքիան շրջափակել են ՀՀ–ն և ԼՂՀ–ն, խզել նրանց հետ տնտ. և այլ հարաբերությունները:

ՇՐՋԵԼԻ ԵՎ ՈՉ ՇՐՋԵԼԻ ՇԱՐԺԸՆԹԱՑՆԵՐ, դարձելի և ոչ դարձելի շարժընթացներ, համակարգի վիճակի փոփոխության շարժընթացներ: **Շրջելի շարժընթացը** կարելի է իրականացնել նաև հակառակ ուղղությամբ՝ հետադարձ կարգով հաջորդաբար կրկնելով ուղիղ շարժընթացի բոլոր միջանկյալ վիճակները: Շրջելի կարող են լինել միայն **հավասարակշիռ** (կամ քվազիստացիոնար) շարժընթացները, որոնք կոչվում են նաև թերմոդինամիկորեն շրջելի: Բոլոր իրական շարժընթացները ոչ շրջելի են և չեն կարող ընթանալ հակառակ ուղղությամբ, օր.՝ դիֆուզիան, ջերմահաղորդականությունը, հեղուկի (գազի) մածուցիկ հոսքը ևն:

ՇՐՋԻԿ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ Ամո Խարազյանի անվան (1933–ից, գործել է 1926–52–ին), կազմակերպել է Ամո *Խարազյանը* Երևանում (1928–ից՝ պետ.): 1949–ից տեղափոխվել է Էջմիածին: Բեմադրություններից են՝ Շիր–վանզադեի «Պատվի համար», Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», Մ. Գորկու «Թշնամիներ», Կ. Գուցկովի «Ուրիել Ակոստա», Վ. Շեքսպիրի «Օթելլո» ևն: Թատերախմբում էին Ա. Խարազյանը, Ս. Հովսեփյանը, Վ. Փանոյանը, Ա. Կլեկչյանը, Ա. Խալաթյանը և ուր.:

ՇՐՋՄԱՆ ԿԵՏ, հարթ կորի այնպիսի M կետ, որում կորն ունի միակ շոշափողը, իսկ այդ կետի բավականաչափ փոքր շրջակայքում (նկ.) կորն ընկած է այդ կետում նրա *շոշափող ուղղի* և *նորմալի* հատումից առաջացած 2 զույգ հակադիր անկյուններից միայն 1 զույգում:



ՇՐՈՒՄՊՖ (Schrumpf) Գուստավ Ադոլֆ (1844–1892), գերմանացի բանասեր, հայագետ: Զբաղվել է անգլ. բանասիրությամբ, նաև հայ–ի քերակ–յամբ, բարբառագիտությամբ, բանահյուսությամբ ևն: «Հայագիտությունը Եվրոպայում» (1890) հոդվածաշարում ներկայացրել է XIV–XIX դդ–ի եվրոպացի հայագետների կենսագրություններն ու հայագիտ. գործերի քննությունները: Հայ. լույս է տեսել Շ–ի «Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրևմուտս (ԺԴ–ԺԹ դար)» (թարգմ. և լրց.՝ Գ. Զարբհանալյանի, 1895) աշխ–ը:

ՇՈՒԱԶԻ (Choisy) Օգյուստ (1841–1909), ճարտ–յան ֆրանսիացի պատմաբան, տեսաբան: Հիմն. աշխ–յան՝ «Ճարտարապետության պատմության» (1899) մեջ անդրադարձել է հայկ. ճարտ–յան զարգացմանն ու ազդեցություններին: Ըստ Շ–ի՝ արաբ. և գոթ. ճարտ–յան մեջ կիրառված փոխհատվող կամարների և ջլաղեղների համակարգերը նախապես գործածվել են հայկ. ճարտ–յան մեջ:

ՇՈՒԲԵՐՏ (Schubert) Ֆեոդոր Իվանովիչ (1758–1825), ռուս. աստղագետ և գեոդեզիստ (ծագումով՝ գերմանացի): Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1789): Աշխ–ները վերաբերում են տես. և գործն. աստղագիտ–յանը, գեոդեզիային: Ռուսաստանում տես. աստղագիտ–յան առաջին դասընթացի (1798) հեղինակն է: Մշակել է լայն–յան և երկայն–յան որոշման մեթոդներ:

ՇՈՒԲԵՐՏ Ֆրանց (1797–1828), ավստրիացի կոմպոզիտոր: Ձարգացրել է Վիեննայի դաս. դպրոցի ավանդույթները: Հեղինակ է մոտ 600 ռոմանտիկ. երգերի («Գեղեցիկ ջրաղացպանուհին», 1823, «Ձմեռային ուղի», 1827, երգաշարեր, ևն), սիմֆոնիաների («Ղորերգական», 1816, «Անավարտ», 1822, ևն), օպերաների, դաշնամուր. և կամեր–գործիք. երկերի, մեսսաների, կանտատների ևն:

ՇՈՒԲԻՆ Սեմյոն Պետրովիչ (1908–1938), ռուս. ֆիզիկոս–տեսաբան: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1935): Աշխ–ները վերաբերում են պինդ մարմնի քվանտ. տեսությանը, քվանտ. էլեկտրադինամիկային, վիճակագր. մեխանիկային: Կառուցել է (Ս. Վ. *Վոնսովսկու* հետ) ֆեռոմագնետիկների բևեռ. և s–d փոխանակային մոդելները: 1937–ին անհիմն բռնադատվել է, մահացել է ազատազրկման մեջ:

ՇՈՒԲԻՆ Ֆեդոտ Իվանովիչ (1740–1805), ռուս. քանդ.: Ռուս. վաղ կլասիցիզմի պլաստիկ դիմաքանդակի վարպետ (Ա. Գոլիցինի, 1775, Ի. Գ. Օռլովի, 1778, Մ. Վ. Լոմոնոսովի, 1792, Ա. Բեզբորոդկոյի, 1798, կիսանդրիներ):

ՇՈՒԲՆԻԿՈՎ Ալեքսանդր Վասիլևիչ (1887–1970), ռուս. ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1953): Սոց. աշխ. հերոս (1967): ԽՍՀՄ ԳԱ բյուրեղագիտ–յան ինստ–ի հիմնադիր–տնօրեն (1944–62, այժմ՝ Շ–ի անվան): Աշխ–ները վերաբերում են բյուրեղների համաչափությանը: Արտածել է հակահամաչափության 58 կետային բյուրեղագիտ. խմբեր (**Շուբնիկովի խմբեր**): Շ–ի ղեկավարությամբ կազմակերպվել է արհեստ. բյուրեղների արտադր–յուն: ԽՍՀՄ Պետ. մրց. (1947, 1950):

ՇՈՒԲՆԻԿՈՎ Լև Վասիլևիչ (1901–1937), ռուս ֆիզիկոս, ցածր ջերմաստիճանների ֆիզիկայի սկզբնավորողներից: Հայտնաբերել է (Վ. դե *Հաազի* հետ) *Շուբնիկով–դե Հաազի էֆեկտը*, հետազոտել գերհաղորդիչների մագնիս. հատկությունները: Առաջարկել է հալվածքից միաբյուրեղների աճեցման մեթոդ (Ի. Վ. *Օբրեիմովի* հետ): Անհիմն բռնադատվել է, գնդակահարվել:

ՇՈՒԲՆԻԿՈՎ–ԴԵ ՀԱԱԶԻ ԷՖԵԿՏ, հաղորդիչների (մետաղներ, կիսահաղորդիչներ) էլ. դիմադրության տատանական կախվածությունը մագնիս. դաշտի լարվածությունից: Դիտվում է ցածր ջերմաստիճաններում և ուժեղ մագնիս. դաշտերում: Օգտագործվում է պինդ մարմիններն ուսումնասիրելու համար: Հայտնաբերել են Լ. Վ. *Շուբնիկովը* և Վ. դե *Հաազը* բիսմութում (1930):

ՇՈՒԳՆԱՆԵՐԵՆ, շուգնանների լեզուն: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի հնդիրան. ճյուղի իրան. խմբին: Գրի հիմքում լատ. (1930–ական թթ.), ռուս. (1980–ական թթ.) այբուբենն է:

ՇՈՒԴՐԱԿԱ, հինհնդ. դրամատուրգիայի ամենանշանավոր գործերից մեկի՝ սանսկրիտով գրված «Կավե սայլակ»–ի (IV դ–ից ոչ շուտ–VIII դ–ից ոչ ուշ) հեղինակը:

ՇՈՒԼԳԻՆ Վասիլի Վիտալիևիչ (1878–1976), ռուս քաղ. գործիչ: II–IV Պետ. դումայի Ժամանակավոր կոմիտեի անդամ, Ա. Ի. Գուչկովի հետ վավերացրել է Նիկոլայ II–ի գահից հրաժարվելու որոշումը: Հոկտ. հեղ–յունից հետո մասնակցել է Կամավոր. բանակի ձևավորմանը: Արտաքսվել է: 1944–ին ձերբակալվել է և մինչև 1956–ը պահվել բանտում: Հեղինակ է «Օրեր» (1925), «1920 թվականը» (1927) հուշագրությունների:

ՇՈՒԼԵՅԿԻՆ Վասիլի Վլադիմիրովիչ (1895–1979), ռուս. երկրաֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1946): Աշխ–ները վերաբերում են ծովերի ֆիզիկային: Սևծով. երկրաֆիզ. կայանի (Ղրիմում) կազմակերպիչ–տնօրենը (1929–49): ԽՍՀՄ Պետ. մրց. (1942):

ՇՈՒԼԹՀԱՅՍ (Schultheis) Տասիլո (1891–1936), գերմանացի լեզվաբան: Հեղինակ է «Մակեդոներենի բարբառները» (1938), «Գերմաներենի ութ առաքինությունները» (1941), «Հայերենը և խեթերենը» (հրտ.՝ 1961) և այլ աշխ–ների: Եղել է բազմալեզվագետ, տիրապետել է 150 լեզվի (ներառյալ՝ հայ–ը):

ՇՈՒԼԺԵՆԿՈ Կլավդիա Իվանովնա (1906–1984), ռուս. էստրադայի երգչուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1971): 1929–ից՝ Լենպետէստրադայի, 1943–ից՝ Համամիութ. հյուրախաղ. համերգ. միավորման, ավելի ուշ՝ Մոսկոնցերտի մեներգչուհի: Խորհրդ. էստրադ. երգի սկզբնավորողներից: Երգացանկում՝ «Կապույտ թաշկինակ», «Եկեք ծխենք», «Երեք վալս» ևն:

ՇՈՒԼՑ (Schultz) Թեոդոր (1902–1998), ամերիկացի տնտեսագետ: Աշխ–ները վերաբերում են զարգացող երկրների տնտ. խնդիրներին, աշխատուժի կազմավորմանը, կրթության տնտ. դերին: Քննադատել է նեոմալթուսականությունը: Նոբելյան մրց. (1979, Ա. *Լյուիսի* հետ):

ՇՈՒԼՑ Սաքս Վալտեր (1921–1991), գերմանացի գրող: Հեղինակ է «Մենք քամուց քշված փոշի չենք» (1962) վեպի, «Ձինվորը և կինը» (1978), «Օդաչու կինը կամ Լռած լեգենդի հայտնագործումը» (1981) վիպակների, «Սիրուն խանգարել է մահը» (1983) նովելների ժող–ի:

ՇՈՒԼՑ Միխայիլ Միխայլովիչ (1919–2006), ռուս. քիմիկոս (ծագումով՝ գերմանացի): ՌԳԱ ակադ. (1979, թղթ. անդամ՝ 1972–ից): Սոց. աշխ. հերոս (1991): 1972–98–ին՝ ՌԳԱ սիլիկատների քիմիայի ինստ–ի տնօրեն, միաժամանակ, 1975–90–ին՝ «Ապակու ֆիզիկա և քիմիա» ամսագրի գլխ. խմբ.: Աշխ–ները վերաբերում են ապակու ֆիզքիմիային և հետերոգեն հավասարակշռությունների թերմոդինամիկային: ԽՍՀՄ Պետ. մրց. (1973, 1986):

ՇՈՒԼՑԵ–ԳԵՎԵՐՆԻՑ (Shulze–Caevernitz) Գերհարդ (1864–1943), գերմանացի տնտեսագետ: Հանդես է եկել «սոցիալական խաղաղություն» հաստատելու հարցադրմամբ: Ֆին. հզորությունների համակենտրոնացումը համարել է «կազմակերպված կապիտալիզմի» արտահայտություն:

«ՇՈՒԽՈՆՑ ԱՎԵՏԱՐԱՆ», թղթե ձեռագիր մատյան (1669, Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանք, գրիչ՝ Բարսեղ): 1750–60–ին Ավետարանը եղել է Աշտարակի Շուխյան գեղդաստանի սեփականությունը (այստեղից՝ անվանումը): 1931–ից Մտնդ–ում է (ձեռ. № 6436): 2008–ից Թարգմանչաց տոնին «Շ. Ա.» Մտնդ–ից տանում են Օշականի Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի՝ ուխտավորների հաղորդակցության համար:

ՇՈՒԽՈՎ Վլադիմիր Գրիգորևիչ (1853–1939), ռուս ճարտարագետ, գյուտարար: ԽՍՀՄ ԳԱ պատվ. անդամ (1929): Աշխ. հերոս (1932): Ստեղծել է մազութի այրման բոցամուղ, հեղուկների օդաճնշ. ամբարձիչ (էոլիֆտ), նավթատարներ, նավթապահեստարաններ, նավթի ջերմ. կրեկինգի սարքավորում, շոգեկաթսաներ, գամավոր միացումներով մետաղե կամուրջներ, աշտարակներ (այդ թվում՝ 148,3 *մ* բարձր–յամբ, Մոսկվայում): Վ. Ի. Լենինի անվ. մրց. (1929):

ՇՈՒԿԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, **մարքեթինգ** (անգլ.՝ marketing – բառացի՝ «գործողություն շուկայում»), ձեռն–ների (ֆիրմաների) արտադր–յան իրացման գործունեության կառավարման համակարգ, լայն իմաստով՝ Շ–ի խնդիրը մարդկանց և հաս–յան պահանջմունքների որոշումն ու բավարարումն է: Ներառում է պահանջարկի, գների ուսումնասիրությունն ու կանխատեսումը, արտադրանքի նոր տեսակների ստեղծման ուղղությամբ ԳՀ և փորձարար–կոնստրուկտոր. աշխ–ների կազմակերպումը, գովազդը, ներֆիրմային պլանավորման ու ֆինանսավորման համակարգումը ևն:

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔ, այն ամենահավանական գինը, որ գոյանում է առաջարկի և պահանջարկի հիման վրա՝ ապրանքի գնահատման վայրում:

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԳՆԵՐ, շուկայում իրացվող ապրանքների արժեքի դրամ. արտահայտությունը, փաստացի գներ, որոնցով իրականացվում են ապրանքների առք ու վաճառքը: Ձևավորվում են տարերայնորեն՝ առաջարկի ու պահանջարկի ազդեցությամբ:

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, տնտեսվարման մեխանիզմ, որը շուկաներում ձևավորվող գների միջոցով հնարավորություն է տալիս բաշխելու տնտ. պաշարները, ապահովելու սպառողների, ֆիրմաների և մատակարարների ընդունած որոշումների մասին տեղեկատվությունը:

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, սոցիալ–տնտ. համակարգ, որը զարգանում է մասնավոր սեփականության և ապրանքադրամ. հարաբերությունների հիմքի վրա: Հիմնվում է ձեռնարկատիր. գործունեության ազատության սկզբունքների վրա: Պաշարների, արդ–յան, ապրանքների և ծառայությունների ծավալն ու սպառումը կարգավորվում են առաջարկով և պահանջարկով: Շուկաների և գների համակարգը, մրցակցությունը Շ. տ–յան համակարգման ու կազմակերպչ. մեխանիզմներն են, որոնք որոշակիորեն ապահովում են նրա ինքնակառավարման բնույթը:

ՇՈՒԿՇԻՆ Վասիլի Մակարովիչ (1929–1974), ռուս գրող, կինոռեժ., դերասան: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1969): Հեղինակ է «Գյուղաբնակները» (1963), «Այնտեղ՝ հեռ–

վում» (1968), «Բնավորություններ» (1973) պատմվածքների ժող-ների, «Լյուբավին-ներ» (մաս 1, 2, 1965, 1987, կինոնկար՝ 1972) վեպի, Ստեպան Ռազինի մասին «Ես եկել եմ ազատություն տալու ձեզ» (1971) կի-նովեպի, նաև կինոսցենարների, որտեղ հանդես է եկել նաև որպես ռեժ. և դերա-սան («Ապրում է այսպիսի տղա», 1964, կինոնկար՝ 1964, «Կարմիր բռինչ», 1974): Շ. նկարահանվել է նաև «Երկու ճեռադոր» (1958), «Հասարակ պատմություն» (1960), «Տղամարդկանց խոսակցություն» (1968), «Լճի մոտ» (1969), «Նրանք մարտնչել են հանուն հայրենիքի» (1975) և այլ ֆիլմե-րում: Հայ. հրատարակվել է «Պատմվածք-ներ» (1979) ժող-ը:

ՌԽՖՍՀ Վասիլև եղբայրների անվ. (1967), ԽՍՀՄ (1971) Պետ., Լենինյան (1976, հետմահու) մրց-ներ:

ՇՈՒՄԱԽԵՐ (Schumacher) Կուրտ (1895–1952), Ս–դ. կուս-յան նախագահ Արմ. Գերմանիայում՝ 1946-ից: Ճաշիստ. դիկ-տատուրայի տարիներին եղել է հա-մակենտրոնացման ճամբարում (բացի 1943-ից):

ՇՈՒՄԱԽԵՐ Միխաել (ծ. 1969), գերմա-նացի մարզիկ (ավտոարշավ): Աշխարհի «Ֆորմուլա 1» առաջնության 7-ակի չեմ-պիոն (1994, 1995, 2000–2004):

ՇՈՒՄԱԿՈՎ Բորիս Ապոլոնովիչ (1889–1979), ռուս մելիորատոր, գիտ. դպրոցի հիմնադիր: ՀամԳԳԱ ակադ. (1964): Սոց. աշխ. հերոս (1969): Աշակել է լիմանների տեսության և կառուցվածքի հարցեր:

ՇՈՒՄԱԿՈՎ Վալերի Իվանովիչ (1931–2008), ռուս վիրաբույժ-փոխպատվաս-տող: ՌԲԳԱ (1988) և ՌԳԱ (1994) ակադ.: Սոց. աշխ. հերոս (1990): ԽՍՀՄ կլինիկ. փոխպատվաստման հիմնադիրը: Աշխ-ները վերաբերում են օրգանների փոխ-պատվաստմանը, սրտի փականների պրոթեզավորմանը:

ԽՍՀՄ (1971), ՌԴ (2002) Պետ., ՌԴ Կառ-յան (2007) մրց-ներ:

ՇՈՒՄԱՆ (Schuman) Ռոբեր (1886–1963), Ֆրանսիայի վարչապետ՝ 1947–48-ին: ԱԳ նախարար՝ 1948–53-ին: ԵԽ-ի, ԵՄ-ի, ՆԱՏՕ-ի հիմնադիրներից: Օժանդակել է Ադխի և պողպատի եվրոպ. միության ստեղծմանը:

ՇՈՒՄԱՆ (Schumann) Ռոբերտ (1810–1856), գերմանացի կոմպոզիտոր, երաժշտա-քննադատ: «Նոր երաժշտական հանդե-սի» (գերմ., 1834) հիմնադիր-խմբ.: Գրել է ծրագր. դաշնամուր. («Թիթեռներ», 1831, «Կառնավալ», 1835, «Կրայսլերիանա», 1838, ևն) և վոկալ շարքեր («Բանաստեղծի սերը», «Կնոջ սերը և կյանքը», երկուսն էլ՝ 1840, ևն), վարիացիաներ («Սիմֆոնիկ էտյուդներ», 1834), սոնատներ, կոնցերտ (1845)՝ դաշնամուրի համար, «Ժենևվևա» (1848) օպերան, «Դրախտը և Փերին» (1843) օրատորիան, սիմֆոնիաներ, կա-մեր., խմբերգ. և այլ գործեր, երաժշտա-դրամատիկ. պատկերներ:

«ՇՈՒՄԱՆԻ ՊԼԱՆ», արևմտաեվրոպ. մի շարք պետությունների քարածխի, երկաթի հանքաքարի և մետաղաձուլ. արդ-յան միավորման ծրագիր, որը 1950-ին առաջարկել է ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ռ. *Շումանը*: «Շ. պ.»-ի իրականացմամբ սկզբնավորվել է արևմտաեվրոպ. ինտեգրացիան:

ՇՈՒՄԱՈՒՍԿԱՍ (Šumauskas) Մոտեյուս Յուոզովիչ (1905–1982), լիտվացի քաղ. և պետ. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1975): 1945–50-ին՝ Լիտվ. ԽՍՀ Պետպլանի նա-խագահ:1956–76-ին՝ Լիտվ. ԽՍՀ ՆԽ նա-խագահ, միաժամանակ, 1967–75-ին՝ Լիտվ. ԽՍՀ ԳԽ նախագահության նախագահ:

ՇՈՒՄԵՐ, **Սումեր**, հնագույն երկիր Հվ. Մի-ջագետքում (այժմյան ԻԻՀ-ի հվ-ում): Մ. թ. ա. մոտ III հզ-ամյակի սկզբին Շումերի տարածքում սկսել են ձևավորվել շումեր. քաղաք-պետությունները (Լագաշ, Ուր, Քիշ և ուր.): Սարգոն Աքքադացու (մ. թ. ա. XXIV դ.) նվաճումների հետևանքով Շ. միավորվել է Աքքադի գերիշխանութ-յան ներքո:

ՇՈՒՄԵՐԵՐԵՆ, **սումերերեն**, *շումերների* (սումերներ) լեզուն: Որպես մեռած լեզու օգտագործել են աքքադացիները և այլ ժողգ-ներ՝ թագավոր. արձանագրութ-յուններում:

ՇՈՒՄԵՐՆԵՐ, **սումերներ**, հնագույն ժողգ Հվ. Միջագետքում, որն այդտեղ բնակվել է դեռևս մ. թ. ա. V հզ-ամյակում: Մար-դարանորեն պատկանել են *եվրոպեոիդ ռասայի արմենոիդ* խմբին: Մ. թ. ա III հզ-ամյակի կեսին սկսվել է աքքադացի-ների հետ Շ-ի լեզվ. ձուլման ընթացքը, որն ավարտվել է մ. թ. ա. II հզ-ամյակի 1-ին կեսին, որից հետո Շ. որպես առան-ձին ժողգ վերացել են պատմության ասպարեզից:

ՇՈՒՄԻԼՈՎ Միխայիլ Ստեպանովիչ (1895–1975), խորհրդ. բանակի գեն-գնդ. (1943): ԽՄ հերոս (1943): ՀՄՊ-ի ժա-մանակ՝ 64-րդ բանակի հրամ. Ստալին-գրադի ռազմաճակատում: 1945–55-ին՝ Բելոմորսկի և Վորոնեժի զորքերի հրամ.:

ՇՈՒՄՊԵՏԵՐ (Schumpeter) Յոզեֆ Ալոիզ (1883–1950), գերմանացի սոցիո-լոգ և տնտեսագիտ-յան պատմաբան: Ավստրիայի ֆինանսների նախարար (1919–20): 1932-ից՝ ԱՄՆ-ում: Տնտեսագիտ. ընկ-յան հիմնադիր-նախագահ (1938), Ամերիկ. տնտեսագիտ. ասոցիացիայի նախագահ (1948): Աշխ-ները վերաբերում են շուկայական համակարգի դինամիկ զարգացման խնդիրներին, առաջընթաց և տնտ. աճ ապահովող գործոններին: Ներմուծել է «ստեղծարար քայքայում» և «ընտրախավային ժողովրդավարություն» հասկացությունները: 2001-ին Բեռլինում հիմնադրվել է Շ-ի ինստ.:

ՇՈՒՄՍԿԱՅԱ Ելիզավետա Վլադիմիրով-նա (1905–1988), ռուս. երգչուհի (կոլորա-տուր. սոպրանո): ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1951): 1944–58-ին՝ Մոսկվայի Մեծ թատ-րոնի մեներգչուհի (Ջուլիետ՝ Շ. Գունոյի «Ռոմեո և Ջուլիետ», Անտոնիդա՝ Մ. Գլինկայի «Իվան Սուսանին», ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

ՇՈՒՄՍԿԻ Յուրի Վասիլևիչ (1887–1954), ուկրաինացի դերասան: Ուկր. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1930): Ուկր. ԽՍՀ (1940), ԽՍՀՄ (1944) ժող. արտիստ: 1934-ից՝ Կիևի Ի. Ֆրանկոյի անվ. ուկր. թատրո-նի դերասան (Բոգդան Խմելնիցկի՝ Ա. Ե. Կորնեյչուկի «Բոգդան Խմելնիցկի», Քաղաքագլուխ՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», ևն): Նկարահանվել է կինոյում («Ստա-լինգրադի ճակատամարտը» ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1950, 1951):

ՇՈՒՄՍԿԻ Վյաչեսլավ Միխայլովիչ (1921–2011), ռուս. կինոօպերատոր: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1982): Նկարահանել է «Տունը, որտեղ ես ապրում եմ» (1957), «Կապրենք մինչև երկուշաբթի» (1968), «Իսկ արշա-լույսներն այստեղ խաղաղ են...» (1972), «Սև ականջով Սպիտակ Բիմը» (1977), «Յոթ զինվորիկներ» (1983), «Քարերի վրա էլ են ծառեր աճում» (1985) և այլ ֆիլմեր:

ԽՍՀՄ Պետ. (1970, 1975, 1985), Լենին-յան (1980) մրց-ներ:

ՇՈՒՆՅԱ (սանսկրիտ – բառացի՝ դատար-կություն), բուդդայականության *մահա-յանա* ուղղության հիմն. հասկացութ-յուններից: Հոգեբ. վիճակ, երբ վերանում է իրականի և ոչ իրականի, կեցության և ոչ կեցության հակադրումը: «Ազատա-գրման» (*նիրվանա*) գլխ. հատկանիշն է:

ՇՈՒՇԱՆ (Lilium), շուշանազգիների ըն-տանիքի բազմամյա սոխուկավոր խոտա-բույսերի ցեղ: Հայտնի է 100 և ավելի տե-սակ՝ Հս. կիսագնդի բարեխառն գոտում, ՀՀ-ում՝ 2՝ Կոտայքի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի մարզերում: Աշակվում է որպես գեղազարդիչ (հայտնի են 3,5 հզ. և ավելի սորտեր):

«ՇՈՒՇԱՆ», թատեր., ընտանեկան, գր., շաբաթաթերթ (1913, Կ. Պոլիս): Խմբ.՝ Զարեհ Նեմցե:

ՇՈՒՇԱՆԱԶԳԻՆԵՐ, միաշաքիլ բույսերի ընտանիք: Ընդերացողունավոր, պալա-րաոսխուկավոր, սոխուկավոր բազմամյա խոտաբույսեր, հազվադեպ ծառանման բույսեր են: Հայտնի է մոտ 530 տեսակ (9 ցեղ)՝ ամենուրեք: Շ. են շուշանը, վարդա-կակաչը, մկնասոխը, հակինթը ևն:

ՇՈՒՇԱՆԵՂՆԱՋԱՐ, **քեղակարոս, շնա-խոտ**, նեխուրազգիների (հովանոցա-վորներ) ընտանիքի բազմամյա կամ երկամյա, հազվադեպ՝ միամյա խոտա-բույսերի ցեղ: Հայտնի է 35 տեսակ, ՀՀ-ում՝ 5՝ Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Տավուշի և այլ մարզերում: Որոշ տեսակ-ներ օգտագործվում են որպես աղցան. և համեմունք. բույսեր:

ՇՈՒՇԱՆՅԱՆ Լիպարիտ Կարախանի (ծ. 1939), թերապևտ, սրտաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1999), պրոֆ. (1999): Աշխ-ները վե-րաբերում են սրտաբանության և ներքին օրգանների ախտաբանության հարցերին:

ՇՈՒՇԱՆՅԱՆ Հարություն Վարդերեսի (1913–1988), խորհրդ. բանակի եֆրեյտոր, Փառքի երեք աստիճանների շքանշանա-կիր (1944,1945): Եղել է 49-րդ առանձին հետախուզ. վաշտի հետախույզ: Աչքի է ընկել Լենինգրադի մարզում, Արլ. Պրու-սիայում, Օդերի գետանցման ժամանակ ցուցաբերած խիզախության համար:

ՇՈՒՇԱՆՅԱՆ Վազգեն (Օսիկ) Գրիգորի (1903–1941), գրող: Մեծ եղեռնի օրերին զրկվել է հարազատներից, ապաստանել որբանոցներում: 1923-ից՝ Փարիզում: Հե-ղինակ է «Գարնանային» (1927), «Օրերը գեղեցիկ չեն» (1929), «Մթին պատանե-թիություն» (1956), «Ճերմակ Վարսենիկ» (1960) վեպերի, «Մահուան առագաստը» (1959), «Երկիր հիշատակաց» (1966), «Երկու վիպակ» (1983), «Ներքին դաշտանկար» (1995), «Քրոնիկոն քնարական» (2000), «Խառնիխուռն» (2001) պատմվածքների ու վիպակների ժող-ների, «Օրագիր» (1999) հուշագրության:

ՇՈՒՇԻ, ք. ԼՂՀ-ում, համանուն շրջանի վարչ. կենտրոնը, Ստեփանակերտից 11 *կմ* հվ՝ 1238–1533 *մ* բարձր-յան վրա: Բն.՝ 4100 (2009): Մինչև 1923-ը եղել է կիսանկախ Արցախի քաղաքամշակութ. կենտրոնը, իսկ մինչև XX դ-ի սկիզբը կարևոր դեր է ունեցել ողջ Հվ. Կովկա-սի քաղ., տնտ. և մշակութ. կյանքում: 1920-ին թուրքերն ավերել և հայաթափել են: 1992-ի մայիսի 9-ին ազատագրվել է

Ադրբեջանի գերիշխանությունից: Պատմաճարտ. հուշարձաններից հայտնի են Շ–ի բերդապարիսպները (հիմն.՝ 1724), Սբ Հովհաննես Մկրտիչ (Կանաչ ժամ, 1848), Ղազանչեցոց Սբ Ամենափրկիչ (1868–87) եկեղեցիները, զույգ մինարեթով «Մեծ մզկիթը» (1883) ևն:

«ՇՈՒՇԻ», հաս–քաղ., գր. երկշաբաթաթերթ (1994–ից, Շուշի): ԼՂՀ Շուշիի շրջվարչակազմի պաշտոնաթերթը:

ՇՈՒՇԻԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑ, արական ուս. հաստատություն Շուշիում: Հիմնադրվել է 1838–ին: 1870–ին ունեցել է 158, 1893–ին՝ 492, 1909–ին՝ 374 աշակերտ: Տեսուչներ են եղել Պետրոս Շանշյանը, Խորեն Ստեփանեն, Վասակ Պապաջանյանը, Ղազարոս Աղայանը և ուր.: 1917–20–ին գործել է որպես լրիվ միջնակարգ դպրոց:

ՇՈՒՇԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սկզբնավորվել է 1818–20–ական թթ–ին: 1827–ին Շուշիում Բազելի (Շվեյցարիա) Ավետարան. ընկ–յան մի խումբ միսիոներներ հիմնադրել են տպարան (նաև դպրոց), որը 1836–ին դարձել է Արցախի հոգևոր թեմի սեփականությունը («Հայոց հոգևոր տեսչության տպարան»). գործել է մինչև 1900–ը: 1854–ին Շուշիում գործել են նաև Մինաս Տարոլիջյանի, 1858–63–ին՝ Սբ Էջմիածնի, 1881–1905–ին՝ Միրզաջան Սահակեան Հակոբյանի (լավագույններից էր Այսրկովկասում, այրվել է 1905–ի Շուշիի հրդեհի ժամանակ), XX դ–ի առաջին 2 տասնամյակներում՝ Մելքում Բաբաջանյանի և Բագրատ Տեր–Սահակյանի տպարանները:

ՇՈՒՇԻԻ ՂԱԶԱՆՉԵՑՈՑ ՍՈՒՐԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻ, ճարտ. հուշարձան ԼՂՀ Շուշի ք–ում: ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդանիստ եկեղեցին (1998–ից): Կառուցվել է Նախիջևանի Ղազանչի (Շահկերտ) գ–ից Շուշի գաղթած բնակիչների միջոցներով (1868–87, ճարտ.՝ Սիմոն Տեր–Հակոբյան): Հայկ. ամենախոշոր եկեղեցիներից է (երկ.՝ 35 *մ*, լայն.՝ 23 *մ*, բարձր.՝ 35 *մ*): Արտաքուստ՝ խաչաձև, 4 մույթերին դրված բարձր գմբեթով հորինվածքը հիշեցնում է Էջմիածնի Մայր տաճարը: Արմ–ում շուշեցի բարերար Ա. Խանդամիրյանի կառուցած եռահարկ զանգակատունն է՝ 2–րդ հարկի 4 անկյուններում՝ հրեշտակների արձաններով (1988–ին ջարդել են ադրբեջանցիները): Եկեղեցին վերանորոգվել (1992–98) և վերաօծվել է 1998–ին: 2008–ին եկեղեցում կատարվել է «մեծ հարսանիք». Պարգև սրբազանի ձեռամբ պսակվել է 550 զույգ:


ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆ, վտմ ԼՂՀ–ում: Կազմավորվել է 1991–ին՝ ԼՂԻՄ–ի համանուն շրջանի հիմքի վրա: Տարածքը՝ 381,3 *կմ*², բն.՝ 5,4 հգ. (2009): Վարչ. կենտրոնը՝ Շուշի: Ունի 1 քաղաք. և 6 գյուղ. համայնք:

ՇՈՒՇԻԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ Մկրտիչ Խանդամիրյանի անվան (2008, նախկինում՝ «Աստղիկ» մանկապատանեկան թատրոն, ապա՝ Շ. պ. թ.), հիմնադիր, գեղ. ղեկ., տնօրեն՝ Լեոնիդ Հարությունյան (2008–ից): Բեմադրվել են Վ. Սարոյանի «Հե՛յ, ո՞վ կա այդտեղ», Գ. Սարգսյանի «Դաս՝ կանանց», Ա. Պ. Չեխովի «Արջը», Ս. Մանարյանի «Երեք խոզուկ», Յ. Վռդրաժեկի «Արագիլն ու խրտվիլակը», Ռ. Աղաջանյանի «Արևիկը հասկացավ» (վերջին երեքը՝ տիկնիկ.) և այլ գործեր: Թատերախմբում են Լ. Բասենցյանը, Ա. Միրզոյանը, Գ. Առուշանյանը, Ա. Հայրապետյանը, Ն. Ղարաբեկյանը և ուր.:

ՇՈՒՇԻԻ ՌԵԱԼԱԿԱՆ ԴՊՐՈՑ, պետ. (ռուս.) հանրակրթ. միջնակարգ դպրոց: հիմնադրվել է Շուշիում 1881–ին: Պատրաստել է տարր. դպրոցի ուսուցիչներ և առևտրի ընագավառի աշխատողներ: Սաների գերակշիռ մասը հայեր էին (1908–ին՝ 315): 1920–ին դարձել է 2–րդ աստիճանի հանրակրթ. միջնակարգ դպրոց:

ՇՈՒՇՆԻԳ (Schuschnigg) Կուրտ (Ալոիզ Յոզեֆ Էդլեր ֆոն, 1897–1977), Ավստրիայի դաշն. կանցլեր՝ 1934–38–ին, ՔՍԿ առաջնորդներից: 1936–ին Շ–ի կառ–յունը ֆաշիստ. Գերմանիայի հետ կնքել է համաձայնագիր, որով Ավստրիան փաստորեն դարձել է «գերմանական երկրորդ պետություն»: 1938–ին համաձայնագիր է ստորագրել Հիտլերի հետ, որն արագացրել է Գերմանիայի հետ Ավստրիայի միավորումը (անշլյուս), որից հետո Շ. ձերբակալվել է: 1945–ին ազատվել և տարագրվել է:


ՇՈՒՌՏՎԻԿ, պտտման առանցքի նկատմամբ տեղաշարժված մատի (բութակ) տեսքով *շուռտվիկային մեխանիզմի* հանգույց: Մատը հոդակապով միանում է սողանին (շարժաձող) (նկ.):



Շուռտվիկների տեսակները. *ա. բութակի տեղադիրքի հաստատուն r շառավղով, բ. սողնակով կարգավորվող r–ով, գ. շրջադարձային սկավառակով կարգավորվող r–ով*

ՇՈՒՌՏՎԻԿԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄ, շարժման մեկ ձևը մեկ այլ ձևի (օր.՝ հավասարաչափ պտտականը՝ համընթացի, անհավասարաչափ պտտականի, ճոճման ևն) փոխակերպող մեխանիզմ: Ունի *շուռտվիկի* կամ *ծնկաձև լիսեռի* ձևի պտտվող օղակ, որը կանգնակին (անշարժ օղակ) և մեխանիզմի այլ օղակին կապված է պտտվող կինեմատիկ. զույգերով (հոդակապերով): Հարթ քառօղակ Շ. մ–ները լինում են հոդակապավոր, շուռտվիկ–սողնանային (առավել տարածված) և շուռտվիկ–կուլիսային:

ՇՈՒՌՏՎԻԿ–ՄՈՂԱՆԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄ, *շուռտվիկային մեխանիզմ*, որի կազմում կա սողան՝ կանգնակի (անշարժ օղակի) հետ համընթաց կինեմատիկ. զույգ կազմող օղակ: Շ–ս. մ. պտտ. շարժումը փոխարկում է ուղղագիծ–համընթացի կամ հակառակը:



Շուռտվիկ–սողնանային մեխանիզմի սխեմա. *1. շուռտվիկ, 2. շարժաթև, 3. սողնակ*

ՇՈՒՍՏՈՎ Ստեփան Ֆեոդորովիչ (1902–1963), ռուս գնդ. (1944): ԽՄ կրկնակի հերոս (1944): ՀՄՊ–ի ժամանակ՝ տանկ. գնդի և գվարդ. տանկ. բրիգադի հրամ.:

ՇՈՒՍՏՈՎԻ ԳԻՆՈՒ ԵՎ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ, ոգելից խմիչքների ձեռն. Երևանում: 1899–ին «Ն. Շուստով և որդիներ» մոսկովյան ԲՀ (գործում էր 1863–ից), Ներսես *Թահիրյանից* գնելով նրա գինու գործարանը (Երևան), դարձրել է նինգ–ի ոգելից խմիչքների ամենախոշոր ձեռն–ը: Հայաստանում խորհրդ. կարգերի հաստատումից հետո գործարանի հիման վրա ստեղծվել է *«Արարատ»* գինու և կոնյակի կոմբինատը:

ՇՈՒՍՏՈՎՆԵՐ, XVII դ–ի և XVIII դ–ի սկզբի ռուս վաճառական–արդյունաբերողներ: Հիմնադիր՝ **Յակով Շ.**: 1670–90–ական թթ–ին **Գրիգորի Ֆեոդորովիչ** և **Վասիլի Ֆեոդորովիչ Շ.** հիմնել են աղի արդ–յուն, 1863–ին **Նիկոլայ Լեոնտևիչ Շ.**՝ալկոհոլ. խմիչքների արտադր–յան «Ն. Շուստով և որդիներ» ընկ–ը, որը 1899–ին գնել է նաև Ն. Թահիրյանի գինու գործարանը, վերափոխել *Շուստովի գինու և կոնյակի գործարանի*: 1914–ին Շ. տնօրինել են Ռուս. կայսրությունում ալկոհոլ. խմիչքների արտադր–յան 30 %–ը, արտահանման՝ 44 %–ը:

ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ, *շուտասելիք*, մանկ. ժող. բանահյուսության կատակային տեսակ, բանաձևային ասույթ: Բաղկացած է մի քանի անդամներից, հանգավոր կամ անհանգ տողերից, որոնց մեջ գերիշխում են նույնահունչ բառերի, նույն կամ նման բաղաձայն հնչյունների կրկնությունները՝ դժվարացնելով ճիշտ արտասանությունը:

ՇՈՒՐ–ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Էլզա Ֆեոդորի (1908–1974), մարգագետնաբույծ: Գդտ. գիտ. դ–ր (1973): Աշխ–ները վերաբերում են սողային աղուտ–ալկալի հողերի բարելավման հարցերին:

«ՇՈՒՐԻՇԿԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆ», մագաղաթե ձեռագիր մատյան [1498, Ասպինակ (Վանի Քաջբերունիք գվռ), գրիչ՝ Բարսեղ քհն., պատվիրատու՝ իշխան Թուրվանդակ]: 1603–04–ին Տեր Գրիգորի ընտանիքն Ավետարանը տեղափոխել է Պարսկաստանի Փերիա գվռ–ի Շուրիշկան գ. (այստեղից՝ անվանումը)՝ Սբ Բարսեղ Կեսարացու վանք: 1971–ից Մնդ–ում է (ձեռ. № 10599): 2002–ից Սբ Գատկին հաջորդող կիրակի օրը «Շ. Ա.» Մնդ–ից տանում են Մուղնու Սբ Գևորգ եկեղեցի՝ ուխտավորների հաղորդակցության համար:

ՇՈՒՐՋԵՐԿՐՅԱ ՆԱՎԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, առաջին Շ.ն. կատարել է Ֆ. *Մագելանի* ղեկավարած իսպ. արշավախումբը (1519–22), երկրորդը՝ անգլիացի Ֆ. *Դրեյկը* (1577–80): Շ. ն–ի շարքում կարևոր են նաև անգլիացի ծովագնաց Ջ. *Կուկի* 3 նավարկությունները (1768–79), որոնց ընթացքում հայտնագործվել են Ավստրալիայի ափերը, Նոր Կալեդոնիան, Հվ. Սանդվիչյան, Հվ. Ջորջիա, Հավայան և այլ կղզիներ, կատարվել են օվկիանոսագր. դիտարկումներ: Ֆ. Ֆ. *Բելինսգհաուզենի* ու Մ. Պ. *Լազարևի* նավարկությունը (1819–1921) ավարտվել է Անտարկտիդայի հայտնագործմամբ: Յուրօրինակ Շ. ն. էր հայկ. «Արմենիա» առագաստանավի աշխարհաշուրջ նավարկությունը՝ Սփյուռքի ճանապարհներով 2009–11–ին (արշավախմբի ղեկ.՝ Ջորի Բալայան, նավապետ՝ Սամվել Կարապետյան):

ՇՈՒՐՈՒՆԻՆ Պավել Իվանովիչ (1912–1956), ռուս գեն–մայոր (1953): ԽՄ հերոս

(1943, 1945): ՀՄՊ-ի ժամանակ՝ գվարդ. հրաձգ. գնդի հրամ.:

«ՇՈՒՅԶԻՆ» («Պատմական ավանդությունների գիրք», «Պատմության գիրք», «Վավերագրերի գիրք», 2-րդ վերնագիրը՝ «Շան շու» – «Հնագույն գիրք»), հինչին. գր. և պատմ. հուշարձան: Ըստ ավանդության՝ կազմել է ***Կոնֆուցիոսը***: «Շ.»-ից պահպանվել է 58 գլուխ: Պարունակում է դից. տարրեր, հերոս. պատումներ, ավանդություններ:

ՇՈՒՔՐՈՒԼՈ (Շուքրուլո Յուսուպով, ծ. 1921), ուզբեկ բանաստեղծ: Ուզբ. ԽՍՀ ժող. բանաստեղծ (1981): Հեղինակ է «Ռուսաստան» (1957), «26-ի լուսաբացը» (1967) պոեմների, «Թռի՛ր, քարածիվ» (1978), «Քո երազանքները» (1980) բանաստեղծությունների ու պոեմների, «Թանկարժեք քարերով սնդուկը» (1977) էսսեների ժող-ների, «Անպատանք թաղվածները» (1990) ինքնակենսագր. վեպի, նաև պիեսների:

Ուզբեկստանի Ալիշեր Նավոյի անվ. Պետ. մրց.:

ՇՈՒՔՈՒՐՅԱՆ Արթուր Կիմի (ծ. 1956), քիթկոկորդականջաբան, վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (2001), պրոֆ. (2002): ՀՀ վաստ. բժիշկ (2007): Կիմ ***Շուքուրյանի*** որդին, Սամվել ***Շուքուրյանի*** եղբայրը: Աշխ-ները վերաբերում են հաղորդչ. ծանրալուրության վիրաբուժ. վերականգնմանը, քրոնիկ. նշիկաբորբով հիվանդների կլինիկալաբորատոր հետազոտմանը և լսողությունը վերականգնող վիրահատություններին: Երևանի (1993-ից) և ՀՀ ԱՆ (2004-ից) գլխ. քիթկոկորդականջաբան:

ՌԲՆԳԱ (2002), Աուդիոլոգների միջազգ. միության (2005) անդամ: ՀՀ նախագահի (2001) և «Կոչում» (2007) մրց-ներ:

ՇՈՒՔՈՒՐՅԱՆ Կիմ Հայկի (1924–2000), քիթկոկորդականջաբան, վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (1966), պրոֆ. (1967): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (1990): Յուրի ***Շուքուրյանի*** եղբայրը, Սամվել և Արթուր ***Շուքուրյանների*** հայրը: Աշխ-ները վերաբերում են անգինաների և քրոնիկ. նշիկաբորբերի ախտածության մեխանիզմներին, ախտորոշմանն ու բուժմանը: ՀՀ-ում առաջինն է կատարել լսողությունը վերականգնող վիրահատություններ: ՀՀ քիթկոկորդականջաբանների գիտ. ընկ-յան նախագահ (1970–90), ՀԽՍՀ ԱՆ գլխ. քիթկոկորդականջաբան (1970–90):

ՀՀ «Միխիթար Հերացի» մեդալ (1989):

ՇՈՒՔՈՒՐՅԱՆ Յուրի Հայկի (ծ. 1940), հաշվող. տեխնիկայի և տեղեկագիտ-յան բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1982), պրոֆ. (1987): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1990-ից): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2011): Կիմ ***Շուքուրյանի*** եղբայրը: 1986–2006-ին՝ ՀՀ ԳԱԱ և ԵՊՀ ինֆորմատիկայի և ավտոմատացման հիմնախնդիրների ինստ-ի տնօրեն, 1995-ից՝ նաև ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, 1995–2002-ին և 2005-ին, միաժամանակ՝ ֆիզմաթ. և տեխ. գիտ-յունների բաժանմունքի ակադ. քարտուղար: Աշխ-ները վերաբերում են թվային ավտոմատների տեսությանը, ԷՀՄ-ների մաթ. ապահովմանը, տրամաբ. նախագծման ավտոմատացման հարցերին և SS-ին: ԽՍՀՄ «Պատվո նշան», ՀՀ «Մեսրոպ Մաշտոց» (2000) շքանշաններ:

ՇՈՒՔՈՒՐՅԱՆ Սամվել Կիմի (ծ. 1950), հաշվող. տեխնիկայի և տեղեկագիտ-յան բնագավառի գիտնական: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1990), պրոֆ. (1993): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996): Կիմ ***Շուքուրյանի*** որդին, Արթուր ***Շուքուրյանի*** եղբայրը: 2000-ից՝ Virage Logic Corp-ի ներդրած հիշողության սարքերի թեստավորման և վերահսկման ծրագրի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են հաշվող. համակարգերի ճարտ. գիտ-յանը, էլեկտրոն. սարքերի և համակարգերի թեստավորմանը, SS-ին, բաշխված հաշվող. համակարգերի և ծրագրերի ձևական մոդելներին:

ՇՓԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ, ունեն շփման մեծ գործակից և բարձր մաշակայունություն (օր.՝ պլաստմասսաների, թուջերի, մետաղախեցեղենի որոշ տեսակներ): Օգտագործվում են արգելակիչ սարքերում:

ՇՓԱԿԱՆՆԵՐ, բաղաձայն հնչյուններ. արտաբերելիս բերանի խոռոչից դուրս մղվող օդը նեղվածքի (միջանցքի) միջով անցնում և շփվում է նրա պատերին՝ առաջացնելով աղմուկ: Հայ-ի Շ. են՝ վ, ֆ (շրթնատամնային), ս, զ (ատամնային կամ սուլական), շ, ժ (նախաքմային կամ շչական), խ, ղ (կատկային), հ (հագագային):

ՇՓՈՒՄ՝ արտաքին, 2 իրար հպվող մարմինների հարաբեր. տեղաշարժի ժամանակ նրանց շոշափման հարթության մեջ առաջ եկող մեխ. դիմադրություն: Մարմնի տեղաշարժին հակառակ ուղղված և այդ մարմնի վրա ազդող դիմադրության ուժն անվանում են ***շփման ուժ***: Վերջինս ամենամեծ արժեքն ունի մարմնի տեղաշարժի սկզբնապահին: Տարբերում են **սահքի և գլորման Շ-ներ**: Գլորման Շ-ման ուժը սովորաբար զգալիորեն փոքր է սահքի Շ-ման ուժից: Շ-ման շնորհիվ են շարժվում ջերմաքարշը, ավտոմեքենան ևն: Շ. օգտագործում են ժապավեն. և ***շփական փոխանցիչներում***, արգելակներում և այլուր: Շ-ման վնասակար ազդեցությունը (մեքենաների և մեխանիզմների տարբեր մասերի տաքացում և մաշում) փոքրացնում են յուղմամբ, առանցքակալների կիրառմամբ՝ սահքի Շ. գլորման Շ-ով փոխարինելու համար: Տես նաև ***Ներքին շփում***:

ՇՔԱՄՈՒՏՔ, ճարտարապետորեն ձևավորված բացվածք շենքի արտաքին պատին՝ հիմն. մուտքը: IV–XIV դդ-ի ճարտ-յան մեջ եղել են Շ-ի բազմաթիվ տարբերակներ: Հայկ. ճարտ-յան մեջ լայնորեն կիրառվել են երկրչփ. և բուս. զարդաքանդակներ, գունավոր քարերով երկրչփ. ձևերի դրվագումներ, բարձրաքանդակներ:

ՇՔԱՆԱՐԳԻԶ (Amaryllidaceae), շքանարգիզների ընտանիքի սոխուկավոր բույսերի ցեղ: Հայտնի է 1 տեսակ: Աճեցնում են բնակարաններում և ջերմոցներում՝ ամենուրեք:

ՇՔՈՒՆԱ (անգլ.՝ schooner), թեք առագաստներով (2–7 կայմով) առագաստանավ: XIX դ-ում օգտագործում էին 2–3 ուղիղ առագաստներով՝ այսպես կոչված մարսելային և բրամսելային Շ-ներ:

Ո

Ո, հայ. այբուբենի 24-րդ տառը, անվանումը՝ վո: Ունի ***գրչագիր***, ***երկաթագիր***, ***բոլորգիր***, ***շղագիր***, ***նոտրգիր*** տառատեսակները: Հայ-ի հետնալեզվային միջին բարձրացման ձայնավոր հնչյուն է (հնչույթ): Թվային արժեքը՝ 600:

ՈԳԵՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, հավատ ***հոգու*** և ***ոգիների*** նկատմամբ, որոնք, իբր, կառավարում են մարդկանց և նրանց շրջապատող աշխարհը: Առաջացել է տոհմատիրության ժամանակաշրջանում, որի տարրերը պահպանվել են համաշխ. բոլոր կրոններում:

ՈԳԵՏԵՍՈՒԹՅՈՒՆ, **սպիրիտիզմ** (լատ.՝ spiritus – հոգի, ոգի), միստիկ. հոսանք, որի հիմքում ընկած է հավատը հանդերձյալ աշխարհում մեռածների հոգիների գոյության և դրանց հետ հաղորդակցվելու հնարավորության մասին: Ո-յան կողմնակիցները մշակել են նաև «հաղորդակցության» ձևեր (սեղանի «պտտեցում» ևն): Ո. ծագել է XIX դ-ի կեսին ԱՄՆ-ում:

ՈԳԻ, փիլ-յան հասկացություն. նշանակում է ոչ նյութական սկիզբ՝ ի տարբերություն նյութականի, բնականի: Փիլ-յան պատմության մեջ «Ո.» մեկնաբանվել է որպես նախահիմք (սուբստանց, համաստվածություն), անհատ (***թևիզմ***, պերսոնալիզմ): Ռացիոնալիզմում Ո-ի բնորոշիչը մտածողությունն է, գիտակցությունը, իռացիոնալիզմում՝ կամքը, զգացմունքը, երևակայությունը, ինտուիցիան ևն: Հինհուն. փիլ-յան մեջ Ո. պնևման է, նուսը, լոգոսը:

ՈԳԻՆԵՐ, գերբն., երևակայական էակներ: Ո-ի պաշտամունքը ծագել է նախնադար. հասարակարգում և հետագայում դարձել կրոն. հավատքների բաղադրատարր: Որոշ ժողդ-ներ, այդ թվում՝ հին հայերը, ոգին բաժանել են չարի և բարու:

«ՈԴԻՄԱԿԱՆ», հինհուն. էպիկ. պոեմ ***Ողիսևսի*** թափառումների մասին, վերագրվում է ***Հոմերոսին***: Ստեղծվել է ***«Իլիական»***-ից հետո՝ մ. թ. ա. մոտ VIII–VII դդ-ում: Հիմքում երկար թափառումներից հետո անճանաչելիորեն փոխված ամուսնու վերադարձն է հավատարիմ կնոջ՝ ***Պենելոպեի*** մոտ: «Ո.»-ում ավելի շատ են կենցաղ. պատկերներն ու հեքիաթ. թեմաները, քան «Իլիական»-ում: Առաջին անգամ հայ. է թարգմանվել 1847-ին (գրաբար, չափածո, թարգմ.՝ Եղիա Թովմածյան), ամբողջ. թարգմ-յունը (արևելահայ., չափածո, թարգմ.՝ Ս. Կրկյաշարյան) լույս է տեսել 1957-ին:

ՈԴԻՍԵՎՍ (Odysseus), Իթակե կղզու առասպել. արքան հուն. դից-յան մեջ, Լաերտեսի որդին: Հոմերոսի ***«Ողիսական»***-ի գլխ. հերոսը: Մասնակցել է Տրոյական պատերազմին, հռչակվել քաջությամբ և հնարամտությամբ: Զորականների վճռով ստացել է զոհված հերոս Աքիլլեսի զենքերը:

ՈՋՄԻ ԵՆԹԱԲԱՐԲԱՌ, հայ-ի «կը» ճյուղի ենթաբարբառ: Խոսվել է Արմ. Հայաստանի Բիթլիսի (Բաղեշի) վիլայեթի Ոզմ գ-ում: Ունի քառանդամ (բ՛–բ–պ–փ) բաղաձայն. համակարգ:

ՈԶՆԱԳԼԽԻԿ (Echinops), **ոզնենի**, աստղածաղկազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 125–130 տեսակ, ՀՀ-ում՝ 8 (գնդիկագլխիկավոր, փշոտ, բազմափուշ, սովոր. ևն)՝ Արագածոտնի, Շիրակի, Տավուշի և այլ մարզերում: Պտուղը պարունակում է կաուչուկ, սապոնիններ, ալկալոիդներ, ֆլավոնոիդներ:

ՈԶՆԱԹՈՒՓ (Acantohlimon), **փշաբարձ**, արճճախոտազգիների ընտանիքի բազմամյա կիսաթփերի ցեղ: Հայտնի է մոտ 150 տեսակ, ՀՀ-ում՝ 16/17 (նրբապոչ, թաղանթավոր, հայկ., թավոտ ևն)՝ Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի և այլ մարզերում: Հայաստանի բնաշխարհիկ են, Արաքսյան և Կալվերտիի Ո-երը՝ Հայկ. լ-աշխարհի բնաշխարհիկ, վարսակայինն աճում է միայն Արարատի մարզում: Այդ տեսակները գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

ՈԶՆԱԽՈՏ (Dactylis), **ոզնուկ**, դաշտավայրուկազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 5 տեսակ, ՀՀ-ում՝ 1 (հավաքված Ո.)՝ գրեթե բոլոր մարզերում: Մատղաշ Ո. արժեքավոր կերաբույս է, պարունակում է C, E վիտամիններ, կարոտին: Խոտի բերքատվությունը՝ 50–60 *ց/հա*:

«ՈԶՆԻ», երգիծ. պարբերաթերթ (1954-ից, Երևան): Խմբ-ներ՝ Հրաչյա Քոչար, Գրիգոր Տեր-Գրիգորյան, Արամայիս Սահակյան, Աստղիկ Սահակյան (2013-ից):

ՈԶՆԻՆԵՐ (Erinacridae), ***միջատակերների*** կարգի Ո-ի ընտանիքի կաթնասունների ցեղ: Հայտնի է 7 տեսակ՝ միավորված 2 ենթաընտանիքում՝ իսկական Ո. և առնետայիններ (գիմնուրներ): Իսկական Ո-ի մարմինը (մեջքը) ծածկված է փշերով. ենթամաշկ. շրջանաձև մկանը կծկվելիս դառնում է գունդ: Հնգամատ են: Եվրոպ. կամ սովոր. Ո. (երկ.՝ 20–25 *սմ*) ապրում են Եվրոպայի և Արմ. Սիբիրի անտառատափաստան. գոտում, օգտակար են, ոչնչացնում են գղտ-յան և անտառտնտ-յան վնասատուներին, նաև մակաբուծակիր (տզակիր), այդ թվում՝ ուղեղաբորբային միջատներին: ՀՀ-ում հանդիպում է Ո-ի 2 տեսակ՝ ***լայնականջ ոզնի*** և ***սպիտակափոր ոզնի***: Սպիտակափոր և սովոր. Ո. ներառված են ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՈԶՈՒ (Pisum), բակլազգիների ընտանիքի խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 6–7 տեսակ, ՀՀ-ում՝ 2՝ բարձր և ցանովի, որն ունի 2 ենթատեսակ՝ սովոր. կամ ցանովի և դաշտ.: Մշակում են Արագածոտնի, Շիրակի, Տավուշի, Կոտայքի, Գեղարքունիքի, Սյունիքի մարզերում: Պարեն., կերային, ագրոտեխ. մշակաբույս է: Սերմերը պարունակում են սպիտակուցներ, ածխաջրեր, հանք. նյութեր, ճարպեր, վիտամիններ, օգտագործում են սննդի մեջ, կանաչ սերմերը նաև պահածոյացնում են:

ՈԶՈՒԻ ԷՎԻՃ, ***լվիճների*** ընտանիքի միջատ: Ոլոռի և այլ ընդավորների վնասատու: Թավշականաչ է, երկ.՝ 4–5,5 *մմ*: Մնվում է ունդերի, ցողունների և տերևների հյութերով:

ՈԶՈՒՆԱԽՈՏ, **ռայգրաս** (Raygrass), ***դաշտավայրուկազգիների*** ընտանիքի խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մի քանի տեսակ՝ Եվրասիայում, Հս. Աֆրիկայում: Բարձր Ո. և որոշ այլ տեսակներ կերաբույս են:

ՈԶՈՒՆԵՆԻ (Carahana), **ոլոռնածառ, խոստեկ**, ***բակլազգիների*** ընտանիքի թփերի և ոչ մեծ ծառերի ցեղ: Հայտնի է մոտ 80 տեսակ՝ առավելապես Մոնղոլիայում և Չինաստանում: Մի շարք տեսակներ (հատկապես՝ ծառանման Ո. կամ դեղին ակացիան) լայնորեն մշակվում են որպես գեղազարդիչ բույս, որոշ տեսակներ կերաբույս են և մեղրատու:

ՈԶՈՐԱԿՇԵՌ-Ք, փոքր ուժերի (ուժերի փոքր մոմենտների) չափման զգայուն ֆիզ. սարք: Ըստ Ո-ի լծակի պտտման անկյան՝ հնարավոր է որոշել գործող ուժերի պտտող մոմենտը և այդ ուժերը:

ՈԶՈՐՈՂ ՄՈՄԵՆՏ **նյութերի դիմադրությունում**, ոլորման դեֆորմացիա առաջացնող ուժ. գործոն: Արտահայտվում է ուժի և երկ-յան արտադրյալով: Ո. մ-ի ազդեցությամբ կառուցվածքի տարրերի լայնական կտրվածքներում առաջանում են ընդլայնական լարումներ:

ՈԶՈՐՈՒՄ, 1. (տեխ) մարմնի դեֆորմացիա, որի դեպքում արտաքին ոլորող մոմենտի (ուժազույգ) ազդեցությամբ տեղի է ունենում այդ մարմնի լայնական հատույթների փոխադարձ պտույտ: Կլոր ձողերում Ո. առաջ է բերում միայն շոշափող լարում, այլ հատույթներով ձողերում՝ շոշափող և նորմալ լարում: 2. (Տեքստիլ արդ.) թելերի, մանվածքների, պարանների, ճոպանների, էլեկտրահաղորդալարերի ու գորգերի ֆիզմեխ. մշակման ձև: Կիրառվում է տեքստիլ, տրիկոտաժի և կարի արդ-յան մեջ:

ՈԼՏ, XIII դ–ի ճարտ.: Ըստ շին. արձանագրության՝ 1244–ին կառուցել է Կարսի բերդի բուրգերը (ճարտ–ներ Ընձակի և Գազանի հետ):

ՈՂԱԿԱՆ, **Ողոկան**, բերդ Տուրուբերան նահանգ–ի Տարոն գավ–ում՝ Մուշ ք–ից հս՝ Արածանի գետի ձախ ափին՝ այժմյան Ախկան գ–ի մոտ: Առաջինը հիշատակել է հույն աշխարհագիր Ստրաբոնը «Օլանե» ձևով: Մինչև 320–ական թթ–ին եղել է Սլկունի տոհմի իշխանանիստ կենտրոնը: Տրդատ Բ–ն այն հանձնել է ***Սամիկոնյաններին***:

ՈՂԲ, 1. (գրկ–յան մեջ) ժանր: Հայ հին և միջնադար. գրկ–յան մեջ տարածված տեսակ, որի բովանդակությունն անձն. և հաս. կյանքի եղեր. իրողություններն ու դեպքերն են (մարդկային կորուստ, պատմաքաղ. արհավիրք, տարերային աղետ ևն): Հայկ. Ո–երը լինում են պատմ., դամբան. (գերեզման.), անձն–քնար., Ո–հիշատակարաններ ևն: Առաջին հայ. Ո. գրել է ***Մովսես Խորենացին***: Ամենակատարյալ օրինակը Ներսես Շնորհալու «Ողբ Եղեսիոյ» պոեմն է: Աչքի են ընկնում Դավթակ Քերթողի, Գրիգոր Տղայի, Խաչատուր Կեչառեցու, Ստեփանոս Օրբելյանի, Առաքել Բաղիշեցու և ուր. Ո–երը, որոնք ստեղծվել են VII–XVII դդ–ում, որից հետո ժանրը դադարել է գոյություն ունենալուց: 2. (Երաժշտ.) **ողբերգ**, ժող. երգի տեսակ՝ կապված հուղարկավորության, հարսանիքի, նաև կենցաղ. այլ հանգամանքներում լացի արարողության հետ: Հայ իրականության մեջ նշանավոր անձանց կորուստը սգալու–ողբալու ծեսի գլխ. բաղկացուցիչը: Կատարել են մասնագետ ողբասաց («ձայնարկու») կանայք: Բուն ժող. Ո. ավելի կենցաղ., քան ծիս. բնույթի է: Առավել բնորոշ է ասերգ.–արտասան. տարրը:

ՈՂԲԱԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ, **տրագիկոմեդիա** [հուն.՝ tragi(co) comoedia], ողբերգ. և կատակերգ. տարրերով միահյուսված դրամատիկ. ստեղծագործություն (ժանր): Առաջացել է XVI դ–ում Ֆրանսիայում: Հիմքում բարոյազեղագիտ. չափանիշների հարաբերականությունն է, երբ նույն երևույթը դրամատուրգը ներկայացնում է և՛ կատակերգ., և՛ ողբերգ. տեսանկյունից: Ո–ական գործողությունների հիմքում հերոսի և իրադրության (հաճախ՝ ողբերգ.), բախման (կոնֆլիկտի) ներքին անլուծելիության անհամապատասխանությունն է: Ո. բնորոշ է XX դ–ի դրամատուրգիային (Լ. Պիրանդելլոյի «Վեց գործող անձ հեղինակի փնտրտուքներում»): Հայ գրկ–յան մեջ Ո. առավել ցայտուն արտահայտված է Հ. Պարոնյանի («Պաղտասար աղբար»), Գ. Սունդուկյանի («Պեպո» ևն), Լեո Կամսարի և ուր. գործերում:

ՈՂԲԱՍՑ, «ձայնարկու գուսանք», ***ողբասող***, ողբերգ. տաղեր, մեղեդիներ ու պարեր հորինող: Նախապես ***Դիոնիսոսին*** (հայկ. Սպանդարամետին) նվիրված տոնակատարությունների ժամանակ կատարվող ծիսակատարության ընթացքում խումբը երգել ու պարել է զոհասեղանի շուրջը, հետագայում սգո հիշատակության և թաղման ծեսերին կապվող գործողության ժամանակ լալկան կանանց գլխավորել է եղերամայրը՝ դառնալով Ո.:

ՈՂԲԵՐԳԱԿ, միջնադարում ***ողբի*** հեղինակ կամ բանավոր ***ողբասաց***, նոր ժամանակներում՝ ողբերգությունների հեղինակ կամ դրանց դերակատար: Ո–ներ են համարվել Էսքիլեսը, Սոֆոկլեսը, Ա. Պոլիցիանոն, Ք. Մաղոն, Վ. Շեքսպիրը, Պ. Կոռնելը, Ժ. Ռասինը և ուր.: Հայ թատրոնի նշանավոր Ո. դերասաններ էին Պ. Ադամյանը, Սիրանույշը, Վ. Փափազյանը և ուր.:

ՈՂԲԵՐԳԱԿԱՆԸ, փիլ–գեղագիտ. կատեգորիա. բնութագրում է մարդու ազատ գործողության ընթացքում առաջացած անհատի և հաս–պատմ. հակամարտությունը, որն ուղեկցվում է տառապանքով և ավարտվում կործանմամբ: Ո–ի մարմնավորման յուրահատուկ տեսակ է ***ողբերգությունը***:

Հայ փիլ–յան մեջ ***Եզնիկ Կողբացին***, չքննելով բուն Ո–ի խնդիրը, այնուամենայնիվ անդրադարձել է կամքի ազատության և նախասահմանման փոխհարաբերությանը և պայմանավորել բանականությամբ: Կամքի ազատության բացարձակ բնույթն ընդգծել են նաև ***Հովհան Սայրավանեցին***, ***Անանիա Շիրակացին***, ***Գրիգոր Տաթևացին***: ***Սյունեցի Հովհաննես Օձնեցին***, մերժելով կամքի ազատության բացարձակության դրույթը, նշել է, որ կամքը կենսագործվում է նախասահմանման միջամտությամբ:

ՈՂԵՐԳՈՒԹՅՈՒՆ, **տրագեդիա** (հուն.՝ tragoedia – նոխազերգություն), դրամատիկ. ժանր՝ համակված ողբերգականի ոգևորությամբ: ***Կատակերգության*** հակառակն է: Ողբերգ. բախումը սովորաբար ավարտվում է գլխ. հերոսի կործանմամբ: Ժանրի դաս. օրինակը Հին Հունաստանի (Էսքիլես, Սոֆոկլես, Եվրիպիդես), Վերածննդի և բարոկկոյի (Վ. Շեքսպիր, Պ. Կալդերոն), կլասիցիզմի (Պ. Կոռնել, Ժ. Ռասին) շրջանների Ո–ներն են: XVIII դ–ից հատկապես ռեալիստ. դրամատուրգիայում Ո. կորցրել է խստությունը, մոտեցել դրամային. առաջացել են միջանկյալ ժանրեր, օր.՝ «քաղքենիական Ո.» (Ֆ. Շիլլեր), ողբերգ. դրամա (Գ. Կլեյստ, Վ. Հյուգո), պատմ. դրամա (Ա. Ս. Պուշկին, Ա. Կ. Տոլստոյ), հերոս. դրամա (Վ. Վ. Վիշնևսկի): XIX դ–ի վերջից արդիական է դարձել ***ողբակատակերգությունը***: Հայ գրկ–յան մեջ XIX դ–ում տարածված էր պատմ. Ո. (Պ. Դուրյան, Մ. Պեշիկթաշլյան, Թ. Թերզյան և ուր.):

ՈՂԿՈՒՀԱԿ (Dictamnus), **խնդակ, խանթեփար, հացենյակ, դեղուկ**, սատապազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 6 (այլ տվյալներով՝ 2) տեսակ, ՀՀ–ում՝ 1 (կովկաս. Ո.)՝ Լոռու, Գեղարքունիքի, Տավուշի, Շիրակի և Սյունիքի մարզերում: Դեղաբույս է, պարունակում է եթերայուղեր, ասկորբինաթթու ևն: Թունավոր է, բույսին դիպչելիս առաջանում է այրվածք:

ՈՂԿՈՒՀԱՊՏԵՐ (Botrychium), իժաղեզվազգիների ընտանիքի բազմամյա կոճղարմատավոր խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 36 տեսակ, ՀՀ–ում՝ 1 (կիսալուսնաձևը)՝ Սյունիքի մարզի ալպ. գոտու ճմակալած մարգագետիններում ու մամռապատ խոնավ վայրերում: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՈՂԿՈՒՀԶԵՒԻ (Staphylea), **ջոնջոլենի, կոռնի**, ողկուզազգիների ընտանիքի ծառերի կամ թփերի ցեղ: Հայտնի է 20 տեսակ, ՀՀ–ում՝ 1 (փետրատերևը)՝ Լոռու և Տավուշի մարզերում: Դեղաբույս է, պարունակում է ալկալոիդներ, ճարպեր, ասկորբինաթթու: Տնտ–յան մեջ օգտագործվում են ծաղկաբույլերը (ջոնջոլի թթու) և սերմերը (ստանում են յուղ): Մեղրատու է և գեղազարդիչ:

ՈՂՅՈՒՄՊ, **Ողյուպ**, մոտ I–II դդ–ի պատմագիր, Դարանաղյաց գավ–ի Անի ամրոցի Արամազդի տաճարի քուրմ: Ո–ի երկը (պահպանվել է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ) ամփոփել է ***Երվանդ Դ*** Վերջինի և ***Արտաշես Ա***–ի պատմությունները:

ՈՂՆԱՇԱՐ, **ողնաշարավոր կենդանիներ**, մարդու և ողնաշարավոր կենդանիների առանցք. կմախք: Մարդու Ո. կազմված է աճառներով, հոդերով և կապաններով միմյանց միացած կամ սերտաճած 32–34 ողերից: Ո. կազմված է 5 բաժնից՝ պարանոց. (7 ող), կրծքային (12), գոտկային (5), սրբոսկր. (5, սերտաճած), պոչուկ. (3–5, սերտաճած): Ֆիլոգենեզում Ո. փոխարինում է ստորին թիկնալարավորների թիկնալարին:

ՈՂՆԱՇԱՐԱԲՈՐԲ, **սպոնդիլիտ** (հուն.՝ spondilos – ողնաշար), ողնաշարի բորբոք. հիվանդություն: Մարդու (հատկապես՝ երեխաների) Ո. առավելապես տուբերկուլոզ. բնույթի է, որի դեպքում ողերի քայքայումն ուղեկցվում է ցավերով, ողնաշարի շարժողության կայուն տեղային սահմանափակմամբ, կուզի, մակածորուկների առաջացմամբ, ողնուղեղ. խանգարումներով: Թարախ. Ո. կոչվում է ***ոսկրածուծաբորբ***:


ՈՂՆԱՇԱՐԱՎՈՐՆԵՐ, **գանգավորներ**, թիկնալարավոր կենդանիների ենթատիպ. կենդանիների առավել կազմակերպված խումբը: Առաջնային առանցք. կմախքը՝ թիկնալարը, փոխարինված է աճառ. կամ ոսկր. ողնաշարով, որի առաջային ծայրով հոդավորված է գանգը: Ո. են բոլորաբերանները, ձկները, երկկենցաղները, սողունները, թռչունները և կաթնասունները: Հնագույն Ո. հայտնի են օրդովիկյան նստվածքաշերտերից, արդեն սիլուր–դևոնում հայտնաբերվել են քաղցրահամ ջրերի ձկնակերպ կենդանիների՝ օստրակոդերմների մնացորդներ: Տեսակների թվով զիջում են անողնաշարներին, սակայն, ըստ հարմարվող. տիպերի և կենսաձևերի, ավելի բազմատեսակ են:

ՈՂՆԱՍԱՀՈՒՄ, **սպոնդիլոլիստեզ** (< հուն. spondilos – ող և listesis – սահել), մարդու ողնաշարի հիվանդություն. ողների տեղաշարժը դեպի առաջ կամ միջողնային սկավառակի կազմափոխությունները: Հաճախ նկատվում է գոտկային 5–րդ ողի տեղաշարժը սրբոսկրի նկատմամբ: Ո–մանը նպաստում են ողնաշարի միջողնային հոդերի ախտահարումը, ֆիզ. ծանր աշխ–ը, գիրանալը:

ՈՂՆԵՐ, ոսկր. կամ աճառ. գոյացություններ, որոնք կազմում են մարդու և ողնաշարավոր կենդանիների առանցք. կմախքը՝ ողնաշարը: Կազմված է մարմնից, աղեղից և ելուստներից: Վերինն աղեղները շրջապատում են ողնուղեղը, ելուստները հոդավորում են Ո. միմյանց միջև, նրանց ամրանում են մկանները:

ՈՂՆՈՒՂԵՂ, մարդու և կենդանիների ԿՆՀ–ի ամենաստորին բաժինը՝ տեղակայված ողնաշար. խողովակում: Սնանկցում է ռեֆլեքսների մեծամասնության իրականացմանը: Մարդու Ո. բաղկացած է 31–32 հատվածից, որոնցից յուրաքանչյուրն ունի 2 զույգ նյարդամատներ՝ առաջային (շարժիչ) և հետին (զգացող): Ո–ի յուրաքանչյուր կողմի առաջային և հետին արմատները, իրար

միանալով, կազմում են ողնուղեղ. նյարդերը: Ո–ի առավել բարդ ռեֆլեքս. ռեակցիաները ղեկավարվում են գլխուղեղից:



Ողնուղեղի լայնական կտրվածքը (ձախից)՝ 1, 2, 3. գլխուղեղի պատյանները (կարծր, ոստրայնային և փափուկ), 4. սպիտակ նյութ, 5. գորշ նյութ, 6 և 7. առաջային (շարժիչ) և հետին (զգացող) արմատներ, 8. ողնուղեղային հանգույց, 9. խառը նյարդ

ՈՂՆՈՒՂԵՂԱԲՈՐԲ, **միելիտ** (հուն.՝ myelos – ողնուղեղ), առաջանում է նյարդահյուսվածքի (նեյրոտրոպ) վիրուսներով ախտահարվելիս (առաջնային Ո.) և որպես այլ վարակիչ հիվանդությունների բարդություն (երկրորդային Ո.): Դրսևորվում է մարմնի ջերմաստիճանի բարձրացումով, լուծանքներով, զգացողության, միզարձակման և սնուցող. խանգարումներով:

ՈՂՆՈՒՂԵՂԱՅԻՆ ՆՅԱՐԴԵՐ, **սպինալ նյարդեր**, սկսվում են ողնուղեղից, առաջանում զգացող և շարժիչ նյարդարմատներից և միանալով կազմում են ողնուղեղ. խառը նյարդեր: Մարդու Ո. ն. 31 զույգ են՝ պարանոց.՝ 8, կրծքային՝ 12, գոտկային՝ 5, սրբոսկր.՝ 5, և պոչուկ.՝ 1: Ո. ն. և նրանցով առաջացած պարանոց., բազկային, սրբոսկր. և պոչուկ. հյուսակները նյարդավորում են ամբողջ մարմնի մաշկը, ներքին օրգանները և կմախք. մկանները: Ո. ն–ի ախտահարումը նյարդարմատների հետ կոչվում է ***նյարդարմատաբորբ*** (ռադիկուլիտ), նյարդահյուսակների հետ՝ նյարդահյուսակաբորբ (պլեքսիտ):

ՈՂՆՈՒԻ (լատ.՝ Carina), համաստեղություն երկնքի Հվ. կիսագնդում՝ Նավախել, Կենդանագիր, Թռչող Ձուկ, Քամելեոն, Ճանճ, Կենտավրոս, Առագաստ համաստեղությունների միջև: ***Կանոպուսը*** (α Ողնուցի) երկնքի 3–րդ (Սիրիուսից հետո) պայծառ աստղն է: ՀՀ տարածքից չի երևում:

ՈՂՆՈՒԻ, կ ի լ (հոլ.՝ kiel, անգլ.՝ kul), 1. նավի հատակի մեջտեղով՝ քթամասից մինչև նավախելի վերջնամասը ձգվող հենան: 2. Ինքնաթիռի, դիրիժաբլի պոչաթևերի ուղղաձիգ մասը:

ՈՂՈՎԱՏ, գետահովտի հատակի բուսածածկ մաս, որը ջրով ծածկվում է միայն գետի վարարման ժամանակ: Տարբերում են մերձհունային, կենտր. և մերձդարավանդ. Ո–ներ: Հարուստ են օրգ. տիղմով և բերրի են:

ՈՂՈՐՄԻ, երգ–բանաձև. նախերգ, որով սկսվում են «Մասնա ծռեր» ժող. վեպը, մասնավորապես՝ Մոկաց տիպաբան. խմբի պատումները: Ո–ները վիպ.–քնար. բնույթի մաղթանքի երգեր են, որոնց մեջ հիշվում են ժող. վեպում գործող հերոսների անունները՝ նրանց (երբեմն՝ նաև վեպն ունկնդրողների նախնիների) հիշատակն օրհնող ողորմության մաղթանքի կրկնվող բանաձևերով: Ո–ները շեշտված ծիս. բնույթի են, երգում են ծանր ու հանդիսավոր մեղեդիով:

ՈՂՋԱԲԵՐԴԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, *Գեղամա լեռների* հվ–արմ. ճյուղավորությունը: Կազմված է կավավազաքար. ծալքավորված շերտախմբերից և հրաբխաբեկոր. ապարներից (Ողջաբերդի հաստվածք), որոնք ծածկված են լավաներով: Բարձր.՝ մինչև 2200 *մ*: Տարածված են սելավ. և սողանք. երևույթները: Լանջերին տարածված են չոր, կատար. մասում՝ լեռն. տափաստանները:

ՈՂՋԻ, գետ ՀՀ Սյունիքի մարզում, Արաքսի ձախ վտակը: Սկիզբ է առնում Զանգեզուրի լ–շղթայի Կապուտջուղ լ–գագաթի հվ–արլ. լանջից՝ 3530 *մ* բարձր–ից: Արաքս է թափվում ծ. մ. 350 *մ* բարձր–յան վրա: Երկ.՝ 82 *կմ*, ավազանը՝ 1175 *կմ*^{2} (ՀՀ–ում, համապատասխանաբար՝ 43 *կմ* և 788 *կմ*^{2}), ջրի միջին ծախսը՝ 9,6 *մ*^{3}/*վ*, հոսքը՝ 302,4 մլն *մ*^{3} (Կապան ք.): Ձախից ընդունում է Գեղի, Աճանան, Արծվանիկ, աջից՝ Գեղանուշ, Բաղացջուր և այլ վտակներ: Մնումը հիմնականում հալոցքային (67 %) և ստորերկրյա (25 %) է, վարարումը՝ ապրիլ–հուլիսին, որի ընթացքում ձևավորվում է տարեկան հոսքի 58 %–ը: Ջրերն օգտագործվում են էներգետիկ և ոռոգման նպատակներով:

ՈՃ, 1. (գրկ.) **գեղարվեստական ոճ**, գեղ. մտածողության, արտահայտչամիջոցների, բովանդակային, ձևային, լեզվ., կառուցվածք. տարրերի, պոետիկայի ամբողջությունը, որի միջոցով ձևավորվում և ստեղծվում են գր. երկը, գրողի աշխարհը, գր. ուղղության կամ խմբակցության գեղագիտ–յունը: 2. **Լեզվի**, հաղորդակցման պայմաններին, իրադրությանը և նպատակին համապատասխան լեզվ. միջոցների ընտրության և խոսքի կառուցման յուրօրինակություն:

ՈՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, *լեզվաբանության* բաժին. ուսումնասիրում է լեզվի ոճերը, պատկերավորման և արտահայտչ. միջոցները, շոշափում խոսքի գեղագիտ–յունն ու մշակույթը:

...ՈՄԱ, **...օմա** (հուն.՝ oma), բարդ բառերի մաս. նշանակում է ուռուցքի (օր.՝ ***ադենոմա***, ***միոմա*** ևն) առկայություն:

ՈՉ ԳԾԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, տարբեր բնույթի (ֆիզ., քիմ., կենսբ. ևն) տատանող. համակարգեր, որոնցում տեղի են ունենում ոչ գծային դիֆերենցիալ հավասարումներով նկարագրվող շարժընթացներ:

ՈՉ ԳԾԱՅԻՆ ՕՊՏԻԿԱ, օպտիկայի բաժին. ուսումնասիրում է պինդ մարմիններում, հեղուկներում և գազերում հզոր լուս. (լազեր.) փնջերի տարածումն ու նյութի հետ նրանց փոխազդեցությունը: Լազեր. ճառագայթումն փոխում է միջավայրի օպտիկ. բնութագրերը (բեկման ցուցիչ, կլանման գործակից), որոնք դառնում են ոչ գծային կախյալ լուս. ալիքի էլ. դաշտի լարվածությունից: Այս դեպքում գծային օպտիկայի կանոնները և ***վերադրման սկզբունքը*** չեն գործում: Այդ պատճառով լազեր. ճառագայթման տարածումն ուղեկցվում է սպեկտր. (բարձրագույն օպտիկ. հարմոնիկների ստացում, փուլ. ինքնակիզակետում ևն), փնջերի անկյուն. տարամիտման (ինքնակիզակետում, ինքնաապակիզակետում, կրոս–փոխազդեցություն), էլ. դաշտի բևեռացումային կառուցվածքի փոփոխություններով. առաջանում է լույսի քվանտ. հատկությունների կառավարման հնարավորություն (տես *Քվանտային օպտիկա*): Հզոր լազեր. փնջերը կարող են միջավայրում մակածել տարր. կոհերենտ գրգռումներ (օպտիկ. ու ձայն. ***ֆոնոններ***, ***պոլյարիտոններ***, ջերմաստիճան. ալիքներ ևն) և ցրվել դրանցից:

ՈՉ ԷՎԿԼԻԴԵՍՅԱՆ ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐ, *էվկլիդեսյան երկրաչափությունից* տարբեր երկրչփ. համակարգեր, որոնց մեջ հատուկ նշանակություն ունեն ***Լոբաչևսկու երկրաչափությունը*** (**հիպերբոլական երկրաչափություն**) և ***Ռիմանի երկրաչափությունը***:

ՈՉ ՄԵՏԱՂՆԵՐ, **մետալոիդներ**, քիմ. տարրեր, որոնք առաջացնում են մետաղներին ոչ բնորոշ հատկություններով պարզ նյութեր: Մետաղ. փայլ չունեն, էլեկտրականության և ջերմության վատ հաղորդիչներ են, կռելի չեն: Հայտնի քիմ. տարրերից բնորոշ Ո. մ. են միայն 22–ը, որոնցից ջրածինը, ազոտը, թթվածինը, ֆտորը, քլորը և իներտ գազերը սովոր. գազեր են, բրոմը հեղուկ է, իսկ բորը, ածխածինը, սիլիցիումը, ֆոսֆորը, ծծումբը, արսենը, սելենը, տելուրը, յոդը և աստատինը՝ պինդ նյութեր:

ՈՉ ՍՏԱՑԻՈՆԱՐ ԱՍՏՂԵՐ, **անկայուն աստղեր**, բնութագրվում են արտաքին շերտերի հավասարակշռության խախտումով, որն արտահայտվում է նյութի ժայթքումներով, աստղերի շուրջը թաղանթների առաջացումով, աստղերի բաբախումով: Ո. ս. ա. են ֆիզիկապես փոփոխվող, սպեկտրափոփոխ, նաև սպեկտրում էմիս. գծեր ունեցող աստղերը: Զարգացման ընթացքում բոլոր աստղերն անցնում են անկայունության մի շարք փուլերով:

ՈՉԽԱՐՈՒԲԵՐԻՔՈՒԹՅՈՒՆ, ***անասնաբուծության*** ճյուղ. զբաղվում է ոչխարների բուծմամբ՝ բուրդ, միս, կաթ, ոչխարենի, գառնենի, ճարպ ստանալու համար: Ունի մի քանի ուղղություն՝ նրբագեղմ, կիսանրբագեղմ, կիսակոպտաբուրդ և կոպտաբուրդ Ո.: Բուծում են ավելի քան 80 ցեղ և ցեղախմբեր: Առավել տարածված են խորհրդ. մերինոսը, ալթայան, ասկանիական, ստավրոպոլյան, ցիգայան, հս–կովկաս., կարակուլյան, ռոմանովյան, էդիլբայան ցեղերը: Ո. առավել զարգացած է Ավստրալիայում, Արգենտինայում, Նոր Զելանդիայում, ԱՄՆ–ում, Մեծ Բրիտանիայում ևն:

Հայկ. լ–աշխարհը եղել է Ո–յան զարգացման նախասկզբն. կենտրոններից: X դ–ի II կեսից Հայաստանում և XI–XIV դդ–ում Կիլիկյան Հայաստանում Ո. հետագա զարգացում է ապրել: Ժող. ընտրասերման միջոցով ստեղծվել են բարձր մթերատու ոչխարի ցեղեր (օր.՝ Կիլիկիայում՝ կարամանյանը): XIX դ–ից ոչխարների գլխաքանակի ավելացմանը զուգընթաց բարելավվել են հոտի կազմը և տեղ. կոպտաբուրդ ոչխարի ցեղերը (մազեխ, բալբաս, բոզախ, դարաբաղ. ևն) զանգվածաբար տրամախաչվել են նրբագեղմ, իսկ 1965–ից՝ կիսանրբագեղմ ցեղերի խոյերի հետ: ՀՀ–ում Ո. զարգանում է կիսանրբագեղմ, մսաբրդակաթնատու, կիսակոպտաբուրդ, մսաբրդակաթնատու ուղղություններով:

ՈՉԽԱՐՆԵՐ (Ovis aries), սնամեջ եղջերավորների ընտանիքի երկկճղակավոր ընտանի կենդանիներ: Առաջացել են վայրի լեռն. խոյերից՝ մուֆլոններից, և արխարներից (արգալիներից) մոտ 8 հզ. տարի առաջ: Ո. տարածված են բազմաթիվ երկրներում: Բուծում են բրդի, մսի, կաթի, մորթու (գառնենի, ոչխարենի) համար:

ՈՊԱՆՅԱՆ Գինևան Միսակի (1923–1993), սեռժանտ: Փառքի 3 աստիճանների շքանշանակիր [1944, 1945 (2)]: ՀՄՊ–ին մասնակցել է Թամանյան 89–րդ դիվիզիայի կազմում: Աչքի է ընկել Ղրիմում (Կերչ) մղված մարտերի, Լեհաստանի տարածքում ռազմ. գործողությունների, Օդերի գետանցման ժամանակ:

ՈՋԻԼՆԵՐ (Anoplura կամ Siphunculata), երկրորդականթև արյունածուծ միջատների կարգ: Հայտնի է 300 տեսակ: Մարդու և կաթնասունների մակաբույծներ են: Մարդու վրա մակաբուծվում են գլխի Ո. (երկ.՝ մինչև 4 *մմ*), հագուստի Ո. (երկ.՝ մինչև 4,7 *մմ*), տափակ կամ ցայլքի Ո. (երկ.՝ 1,5 *մմ*): Կարող են փոխանցել վարակիչ հիվանդություններ (***բծավոր տիֆ***, ***հետադարձ տիֆ***, ***փենդ*** ևն): Կենդանիների Ո. մարդուն չեն փոխանցվում: Մարդու Ո–ով տարածվող մաշկի հիվանդությունը կոչվում է ոջլոտություն՝ **պեդիկուլոզ** (լատ.՝ pediculus – ոջիլ):

ՈՋԼԱԴԵՂ (Pedicularis), **ոջլաբույս, ոջլախոտ**, խլածաղկազգիների ընտանիքի բազմամյա, հազվադեպ՝ միամյա կամ երկամյա կիսամակաբույծ խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 600 (այլ տվյալներով՝ 250) տեսակ, ՀՀ–ում՝ 7 (հայկ., Սիբթորպի, հաստակնճիթ, մերկ ևն)՝ գրեթե բոլոր մարզերի ալպ. և ենթալպ. գոտիներում: Ո–ի որոշ տեսակներ պարունակում են աուկուբին գլիկոզիդ, ալկալոիդներ ևն: Միջատասպան է, թունավոր:

ՈՈՒԳԵԼԻ ԵՐԿԲԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գղտ. բույսերի մշակումը ոռոգման պայմաններում. ինտենսիվ երկրագործության ձև: Զևավորվել է դեռևս նեոլիթի ժամանակաշրջանում: Ոռոգվող դաշտերում մշակում են հիմնականում հացահատիկ. (բրինձ, ցորեն, եգիպտացորեն, սորգո, կորեկ ևն), տեխ. (բամբակենի, շաքարեղեգ ևն), կեր., բանջար., պտղատու բույսեր: Հայկ. լ–աշխարհում Ո. ե. զարգացած է եղել դեռևս մ. թ. ա. IX–VIII դդ–ում: ՀՀ–ում Ո. ե–յան հիմն. շրջաններն են Արարատյան դաշտը, Նախալեռն., Շիրակի, Զանգեզուրի, Վայքի, մասամբ՝ մնացած գոտիները: ՀՀ–ում Ո. ե–յան գիտ. հիմունքների մշակմամբ զբաղվել են Ս. Խաչատրյանը, Պ. Տեր–Զաքարյանը, Ա. Ֆ. Ռադկոն, Ս. Սանոյանը և ուր.:

ՈՈՒԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, հողատարածքը՝ ջրատեխ. (ջրարգել ու ջրմուղ կառույցներ, ջրանցքներ, խողովակաշարեր ևն) և շահագործ. (ճանապարհներ, կամուրջներ ևն) կառույցներով, որոնք ապահովում են նրա ոռոգումը: Ավելի խնայող. են փակ Ո. ի–երը (խողովակաշարեր ևն), կաթիլային ոռոգումը:

ՈՌՈԳՈՒՄ, **իռիգացիա** (լատ.՝ irigatio), անրավարար խոնավությամբ հողերի ջր. պաշարների արհեստ. լրացում: Նպաստում է հողում բույսերի աճման ու զարգացման համար անհրաժեշտ ջր., օդ., ջերմ. և սննդ. ռեժիմների ստեղծմանը: ՀՀ–ում և ԼՂՀ–ում Ո. հողբարելավման հիմն. եղանակներից է և ներառում է տեխ., ագրոտեխ. ու կազմակերպչ. տնտ. միջոցառումների համալիրը: Տարբերում են խոնավացման, պարարտացման, աղազերծման ու ջերմ., իսկ ըստ ջրման հաճախականության՝ նաև կանոնավոր և պարբեր. Ո–ման տիպեր: Ո–ման համար ստեղծվում են ***ոռոգման համակարգեր***:

ՈՍԽԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 350, հայ–հռոմ. միացյալ և պարսկ. զորաբանակների միջև՝ Բասեն գվո–ի Ոսխա գ–ի մոտ: Պարսից արքա Շապուհ II–ը, գերելով և կուրացնելով Հայոց արքա ***Տիրանին***, փորձել է՝ նվաճել Հայաստանը: Հայ ավազանին հռոմ. զորքի օգնությամբ ջախջախել է պարսկ. բանակը և ազատագրել երկիրը: Կնքված հաշտության պայմանագրով ազատվել են Տիզբոնում բանտարկված Տիրանը և մյուս հայ գերիները:

ՈՍԿԱՆ Երվանդ Հակոբի (1855–1914), քանդ.: Հեղինակ է թեմատիկ քանդակների («Թուրք մուրացիկը», 1882, «Ձեյբեկ կնոջ պարը» ևն), դիմաքանդակների («Տիգրան Չուխաճյան», «Ինքնադիմաքանդակ», 1882, ևն), գեղանկարների («Հոր դիմանկարը», 1889, «Թուրը սրել տվող զեյբեկը ևն): 1883–ին (Օսման Համիդ–Ռեյի հետ) հիմնադրել է Կ. Պոլսի գեղարվ–ի ուսումնարանը (այժմ՝ Գեղեցիկ արվ–ների պետ. ակադ.), նաև հնագիտ. թանգարանը:

Միջազգ. ցուցահանդեսի 2 արծաթե մեդալներ (1878, Փարիզ):

ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ, Ղևոնդ (1614–1674), տպագրիչ, լեզվաբան: Արք.: ***Ավետիս Ղևոնդեցի*** եղբայրը: 1634–ին Նոր Ջուղայից գնացել է Էջմիածին, եղել Ուշիի Սբ Սարգիս վանքի վանահայրը: 1662–ին ***Հակոբ Դ Ջուղայեցու*** հանձնարարականով մեկնել է Ամստերդամ՝ Աստվածաշունչը հայ. հրատարակելու: 1664–ին ստանձնել է Ամստերդամի հայկ. տպարանի տնօրինությունը: 1666–68–ին իր աշակերտներ ***Կարապետ Անդրիանացու*** և Օհան Երևանցու հետ տպագրել է Աստվածաշունչը, որը հայկ. տպագրության բացառիկ նմուշներից է: Այստեղ նա հրատարակել է ևս 14 անուն գիրք, այդ թվում՝ իր կազմած «Քերականութեան գիրքը» (1666): 1669–ին տպարանը փոխադրել է Լիվոռնո, 1672–ին՝ Մարսել (գործել է մինչև 1686–ը), հրատարակել է 40 անուն հայ. գրքեր: Տպագրության բարձր որակի համար և՛ տպարանը, և՛ հրտ–յունները կոչվել են Ոսկանյան: Դրանք բազմիցս նույնությամբ արտատպել են: Ո. Ե. հայ հին տպագրության ամենախոշոր դեմքերից է:

«ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ», տպագրատուն: Ստեղծվել է 1994–ին Երևանում ՀԽՍՀ կուս–յան տպարանի (հիմն.՝ 1960) հիմքի վրա: Հիմնադիր–տնօրեն՝ Մեխակ ***Տեր–Սարգսյան***:

ՈՍԿԱՆՅԱՆ Արզաս Գրիգորի (ծ. 1947), կոմպոզիտոր, երգիչ: Պրոֆ. (1996): ՀՀ արվ. վաստ. գործիչ (2008): 1973–ից՝ Հայհամերգի մենակատար: Հավաքել և մշակել է բազմաթիվ հայկ. ժող. երգեր ու մեղեդիներ: Գրել է կոնցերտ՝ թառի և ժող. նվագախմբի, «Նարեկացու 3 ընթերցում»՝ ձայնի և երգեհոնի, «Երեք հայրեն» (ըստ Ն. Քուչակի)՝ ձայնի և ջութակի համար, «Երեք երգ Իսահակյանի խոսքերով» դուդուկների և դհոլի նվագակցությամբ, «Եռերգություն ժողովրդական թեմաներով», Պատարագ (քառաձայն), «Օքրոյական» երաժշտ. ներկայացումը՝ երգչախմբի և սիմֆ. նվագախմբի (2005), «Ոգու թռիչք»՝ պատկեր դուդուկի և սիմֆ. նվագախմբի համար (2008), կամեր–գործիք. և այլ երկեր: ՀՀ Պետ. մրց. (2003), «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» շքանշան (2017):

ՈՍԿԱՆՅԱՆ Արտակ Սուրենի (ծ. 1938), բանաստեղծ, թարգմանիչ, խմբ–հրտ.: 1970–79–ին՝ Հայկ. հանրագիտարանի խմբագրությունում (1975–79–ին՝ գլխ. խմբ–ի տեղակալ): 1990–ից՝ ***«Անահիտ»***, 2006–ից՝ նաև «Օքրո Օքրոյան» հրտչ–յունների տնօրեն, 2003–ից՝ գր. հիմնադրամի նախագահ: Հեղինակ է «Կարճ միացում» (1980), «Կարոտի կայմ» (1985), «Հետպատերազմյան փողոցի հեքիաթը» (2011), մանկ. «Թզուկը» (2003), «Գույների հեղեղը» (2003) և բանաստեղծությունների այլ ժող–ների, «Ռիչարդն ընդդեմ Ռիչարդի» (2006) թատերագիտ. էսսեի:

ՈՍԿԱՆՅԱՆ Արուս Տիգրանի (Դարպասյան Արուսյակ, 1889–1943), դերասանուհի: ՀԽՍՀ ժող. արտիստ (1935): Հովսեփ ***Ոսկանյանի*** կինը: 1909–21–ին՝ Բաքվի հայկ. դրամատիկ. խմբի, Թիֆլիսի արտիստ. թատրոնի, 1921–ից՝ Հայաստանի Առաջին պետթատրոնի (նաև հիմնադիրներից) դերասանուհի: Ճանաչվել է «ճակատագրական կնոջ» կերպարների անձնավորումներով (Մարգարիտ՝ Շիրվանզադեի «Պատվի համար», Օֆելյա՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», Ամալյա՝ Ֆ. Շիլլերի «Ավազակներ», Նորա՝ Հ. Իբսենի «Նորա», Կրուչինինա՝ Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», Նաստյա՝ Մ. Գորկու «Հատակում», ևն): Եղիշե Չարենցը նրան նվիրել է բանաստեղծություններ:

ՈՍԿԱՆՅԱՆ Գասպար Կարապետի (1887–1940), խորհրդ. ռազմ. գործիչ, գնդ.: Մասնակցել է ԱՀՊ–ին: Եղել է Մոսկվայի զինկոմ: Ռուսաստանում քաղաքաց. պատերազմի ժամանակ գլխավորել է Սամարայի (հետագայում՝ 25–րդ հրաձգ.), 1919–ին՝ 49–րդ, 1919–ի հոկտ–ից՝ 4–րդ դիվիզիաները, 1920–ի հունիս–օգոստ–ին՝ Հվ–արմ. ռազմաճակատում սպիտակ լեհերի դեմ մարտնչող 12–րդ բանակները, 1922–ին՝ 6–րդ կորպուսի հրամ., 1925–ին՝ Թուրքեստանյան ՋՕ հրամ–ի տեղակալ: 1926–30–ին՝ ԽՍՀՄ ներկայացուցչության ռազմ. կցորդ Ֆինլանդիայում, Թուրքիայում, Իտալիայում: Անհիմն բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ԽՍՀՄ Կարմիր դրոշի (3), Կարմիր աստղի (3) շքանշաններ:

ՈՍԿԱՆՅԱՆ Էլեոնորա Սերգեյի (1921–1999), դաշնակահարուհի, մանկավարժ: Պրոֆ. (1982): ՀՀ վաստ. արտիստ (1964): 1945–ից՝ Հայֆիլհարմոնիայի դաշնակահարուհի, 1946–48–ին՝ ԵԵԿՄ կոնցերտմայստեր: Որպես մենակատար և նվագակցող՝ համագործակցել է Ավետ Գաբրիելյանի, Գոհար Գասպարյանի և ուր. հետ:

ՈՍԿԱՆՅԱՆ Էմիլ Սերոբի (1941–2014), քիմիկոս: Տեխ. գիտ. դ–ր (1990), պրոֆ. (2003): ՀՃԱ թղթ. անդամ (1996): Աշակել և արդ–յան մեջ ներդրել է քլոր– և բրոմ–նահրիտների, քլոր–կաուչուկների ստացման եղանակներ, որոնց հիմքի վրա արտադրվել են մի շարք բաղադրանյութեր, լաքեր, ներկեր, սոսինձներ, մածուկներ, ջրա– և ջերմամեկուսիչ ծածկույթներ:

ՌԲՍԳԱ անդամ (1998):

ՈՍԿԱՆՅԱՆ Կառլեն Վաղարշակի (1930–2014), հոգեբան: Հոգեբ. գիտ. դ–ր (1983), պրոֆ. (1988): Աշխ–ները վերաբերում են մտածողության համակարգ. բնույթին և նրա խնդիրների լուծման հոգեբ. մեխանիզմներին:

ՈՍԿԱՆՅԱՆ Հակոբ (Տեր–Ոսկանյան Յակով) Մկրտչի (1924–1993), դիրիժոր: ՀՀ ժող. արտիստ (1977): Պրոֆ. (1989): 1958–ից՝ ԵՕԲԹ դիրիժոր (1988–91–ին՝ նաև տնօրեն, գեղ. ղեկ.): Ղեկավարել է Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճը», Ա. Ադանի «Ժիզել», Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ», Ս. Ս. Պրոկոֆևի «Սոխրոտը», «Ռոմեո և Ջուլիետ», Ա. Խաչատրյանի «Գայանե» (նաև Գդանսկում, 1976), «Սպարտակ» (1970, Վրոցլավ), Բ. Ասաֆևի «Բախչիսարայի շատրվանը» (1966, Կահիրե), Է. Արիստակեսյանի «Պրոմեթևս» (1968, Կատովիցե), Ա. Կրեյնի «Լաուրենսիա» (1969, Բիտոմ) բալետները, Է. Հովհաննիսյանի «Սասունցի Դավիթ» օպերա–բալետը, «Ճանապարհ դեպի Արզրում» օպերան ևն:

ՈՍԿԱՆՅԱՆ Հովսեփ Աթանասի (1883–1939), դերասան, ռեժ., թատեր. գործիչ: Աղբր. ԽՍՀ վաստ. արտիստ (1931): Արուս *Ոսկանյանի* ամուսինը: Նպաստել է օպերետ. ժանրի տարածմանն Այսրկովկասում: Դերերից են՝ Մինթոն, Սաղաթել (Շիրվանզադեի «Մորգանի խնամին», «Պատվի համար»), Արբենին (Մ. Յ. Լերմոնտովի «Դիմակահանդես»), Քին (Ա. Դյումա–հոր «Քին») ևն:

ՈՍԿԱՆՅԱՆ Հրանտ Մուշեղի (1924–2005), կուս–պետ. գործիչ: ՀԽՍՀ ԳԽ նախագահության նախագահ՝ 1985–90–ին: 1973–85–ին՝ ՀԿԿ ԿԿ քարտուղար:

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի, ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2004) շքանշաններ:

ՈՍԿԱՆՅԱՆ Մարինա (ծ. 1961), քիմիկոս–ճարտարագետ, նավթագետ: Մշակել է նավթահետախուզման նոր եղանակներ, որոնք կիրառվում են ԱՄՆ–ում: 1984–ից՝ Կալիֆոռնիայի երկրբ. հարցերի վերլուծող, Նավթագետների համաշխ. ընկերակցության Կալիֆոռնիայի մասնաճյուղի նախագահ: 1990–ին նավթի հետախուզման աշխ–ներ է կատարել Հայաստանում:

ՈՍԿԱՆՅԱՆ Մարտունի Գրիգորի (ծ. 1933), քիմիկոս–օրգանիկ: Քիմ. գիտ. դ–ր (1982): Աշակել է պոլիվինիլացետալների ստացման նոր եղանակ: Ենթնային, պրոպարգիլային և ալենային հալոգենիդների նուկլեոֆիլ տեղակալման շարժընթացներում հայտնաբերել է ապահալոդիմերման, տեղակալման–ցիկլման, պարա–ալկիլման ռեակցիաներ: Պատրաստել է ածխածնի և ջրածնի քանակ. որոշման կիսաավտոմատ սարք:

ՈՍԿԱՆՅԱՆ Նինել Աշոտի (1923–2005), մատենագետ: Նրա ղեկավարությամբ կազմվել ու հրատարակվել են «Հայ գիրքը 1512–1800 թվականներին» (1988) և «Հայ գիրքը 1851–1900 թվականներին» (1999) մատենագիտ. աշխ–ները:

ՈՍԿԱՆՅԱՆ Շոթա Նապոլեոնի (ծ. 1960), գեղանկարիչ, քանդ.: ՀՀ վաստ. նկարիչ (2015): Հեղինակ է «Մարդիկ և տիկնիկները» (2008), «Նրբագեղ սևահերը» (2015), «Ամոթխած մերկություն» (2015) կոմպոզիցիաների, «Դերասանուհին» (2014), «Երազկոտ աղջիկը» (2015) դիմանկարների, «Մենայի վրա» (2015), «Լուսաբաց Փարիզում» (2015), «Հին բակ Թբիլիսիում» (2016) բնանկարների, «Կապույտ մրգամանով նատյուրմորտի» (2015), «Ճախրող պար» (2016), «Ճակատագրական կինը» (2015) քանդակների և այլ գործերի:

ՈՍԿԱՆՅԱՆ Շողիկ Բաբկենի (ծ. 1941), մանկավարժ: Մանկավարժ. գիտ. դ–ր (2011), պրոֆ. (2012): Աշխ–ները վերաբերում են հայկ. դպրոցի ու մանկավարժ. մտքի պատմությանը, արևմտահայ դպրոցի ու մշակույթի անվանի գործիչներին:

ՈՍԿԱՆՅԱՆ Ստեփան, **Ստեփան Ոսկան** (1825–1901), հրապարակախոս, խմբ., թարգմանիչ: Փարիզում 1855–56–ին՝ *«Արևելք»* պարբ–ի, 1859 և 1864–65–ին՝ *«Արևմուտք»* հանդեսի խմբ–հրտ., 1860–ին՝ Տուրինում (Իտալիա) «L'Italia» (ֆրանս.) թերթի խմբ.: 1865–ից Զմյուռնիայում եղել է Մեսրոպյան ու Հռիփսիմյան վարժարանների տեսուչ, հիմնադրել է Ուսումնասեր ընկ–ը: 1869–1901–ին՝ Զմյուռնիայի «Բարեփոխում» (ֆրանս.) թերթի հրտ.: Հեղինակ է «Ազգային պակասութիւն», «Հայ դիւցազնուհի մը», «Խաչատուր Աբովեան», «Քսանչորս ստութիւնք», «Լեռնականք», «Հայրենիք եւ հայրենասիրութիւն» և այլ աշխ–ների: Թարգմանել է ֆրանս. գրողների ստեղծագործություններից:

ՈՍԿԱՆՅԱՆ Վաղինակ Բոգդանի (1913–1997), անասնաբույծ: Գղտ. գիտ. դ–ր (1962), պրոֆ. (1963): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (1973): Աշխ–ները վերաբերում են տեղ. և խառնացեղ տավարի մարմնակազմվածքի, մթերատվության, կովկաս. գորշ ու սևաբղետ տավարի ցեղերի ընտրասերման, տրամախաչման հարցերին:

ՀՄՊ 1–ին աստիճանի, ԽՍՀՄ Կարմիր աստղի, Աշխ. կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքանշաններ:

ՈՍԿԱՆՅԱՆ Վարուժան Պերճի (ծ. 1958), ռումինագիր գրող, պետ–քաղ. գործիչ, խմբ.: Տնտեսագիտ. դ–ր (1998): 1996–2003–ին՝ Ռումինիայի «Աջ ուժերի միություն» կուս–յան հիմնադիր–նախագահ: 1996–2000–ին և 2004–ից՝ սենատոր, Սենատի հանձնաժողովի նախագահ, 2006–2014–ին՝ Էկոնոմիկայի նախարար: 1989–ից՝ Ռումինիայի հայոց միության հիմնադիր–նախագահ, 1990–ից՝ *«Արարատ»* հայագիտ. հանդեսի խմբ.: Հեղինակ է «Կապույտ Շամանը» (1994), «Թագուհու սպիտակ աչքը» (2001), «Հազարաթև Հիսուսը» (2005) բանաստեղծությունների, «Կոմանդորի արձանը» (1994, Բուխարեստի գրողների ընկերակցության մրց.), «Հարյուր տերև և այլ պատմվածքներ» (2013) ժող–ների, «Շշուկների մատյան» (2009, Ռումինիայի ակադ–ի գր. գլխ. մրց., թարգմանվել է ավելի քան 15 լեզվով, հայ.՝ 2012) վեպի:

ՈՍԿԱՆՅԱՆ Վոլոդյա Երջանիկի (ծ. 1932), կենսաբան–էկոլոգ: Կենսբ. գիտ. դ–ր (1987): Աշխ–ները վերաբերում են ՀՀ բարձրլեռն. արոտավայրերի պահպանությանը, բերքատվության բարձրացմանը, բուս. պաշարների վերականգնմանը, «Էրեբունի» պետ. արգելոցի բուսականության, ֆլորայի, բուս. պաշարների հետազոտմանը (2000–02–ին եղել է արգելոցի պետ):

ՈՍԿԵ ԱՎԱԶՆԵՐ, **Զլատնի Պյասիցի**, կլիմ. առողջավայր Բուլղարիայում՝ Սև ծովի ափին՝ Վառնայից՝ հս–արլ.: Ո. ա–ի մոտակայքում է Ալաջա մենաստանը (հիմն.՝ III դ.): Զարգացած է միջազգ. զբոսաշրջությունը:

ՈՍԿԵ ԱՓ (Gold Coast), 1. Գվինեական ծոցի առափնյա մասը Գանայի տարածքում՝ Վոլտայի և Տանոյի գետաբերանների միջև: Անվանումը կապված է XV դ–ում այստեղ հայտնաբերված ոսկու հանքավայրերի հետ: 2. Ամր. Աֆրիկայում բրիտ. նախկին գաղութի (XIX դ–ից) անվանումը: 1957–ին Ո. ա–ի և Տոգոյի (նախկինում՝ բրիտ. խնամակալություն) մի մասի միավորումով ստեղծվել է *Գանա* պետությունը:

ՈՍԿԵ ԲՈՒԼԼԱ, 1. **1222** (հունգ.՝ Aranybulla), Հունգարիայի թագավոր Անդրուշ (Էնդրե) II Արփադի հրովարտակը: Ամրագրել է պալատ. արտոնությունները: Խոշոր ավատատերերին իրավունք էր վերապահում ապստամբելու արքայի դեմ, եթե վերջինս խախտեր Ո. բ.:

2. **1356** (լատ.՝ Bulla aurea), Նյուրնբերգում (հունվ.) և Մեցում (դեկտ.) կայսեր. սեյմի ընդունած որոշումը, որը *Կառլ IV–ը* հաստատել էր որպես Հռոմ. սրբազան կայսրության օրենսդր. ակտ: Օրինականացրել է *կուրֆյուրստների*՝ կայսրին ընտրելու կարգը, նրան շնորհել դրամահատման, տուրքադրման արտոնություններ: Կիրառվել է մինչև 1806–ը:

«ՈՍԿԵ ԳԵՂԸ», կախարդ. ոչխարի ոսկե մորթի հուն. դից–յան մեջ, որը Կողքիսի արքայի մոտ պահպանում էր վիշապը: «Ո. գ.» *Յասոնի* գլխավորությամբ գողացել են *արգոնավորդները*:

ՈՍԿԵ ԴԱՐ, առասպել. պատկերացում անտիկ աշխարհում նախնադար. հաս–յան երջանիկ ու անհոգ կացության վերաբերյալ: Առավել հստակ արտահայտված է Հեսիոդոսի «Աշխատանք և օրեր» և Օվիդիոսի «Կերպարանափոխություններ» պոեմներում: Փխբ. իմաստով՝ արվ–ի և գիտ–յան ծաղկման ժամանակաշրջան:

ՈՍԿԵ ԴԱՐՊԱՍ (Golden Gate), նեղուց, միացնում է Սան Ֆրանցիսկոյի ծովախորշը Խաղաղ օվկ–ին: Երկ.՝ 8 *կմ*, լայն.՝ 1,5–3 *կմ*, խոր.՝ մինչև 43 *մ*: Հվ. ափին է Սան Ֆրանցիսկոն: 1937–ին կառուցվել է Ո. Դ–ի կախովի կամուրջը (3100 *մ*):

ՈՍԿԵ ԹՅՈՒՆԻԿ (Coryphaena hippurus), **մեծ կորիֆենա**, *պերկեսաձկերպների* կարգի ձուկ: Գունավորումը վառ է, կողքերը և փորիկը՝ ոսկեփայլ կամ արծաթափայլ: Երկ.՝ մինչև 2 *մ*, կ. գ.՝ մինչև 30 *կգ*: Ապրում է բոլոր օվկ–ների արևադարձ. ջրերում: Արդյունագործ. ձուկ է:

«ՈՍԿԵ ԾԻՐԱՆ», ամենամյա միջազգ. կփ, հիմնադրել են կինոյի զարգացման «Ոսկե ծիրան» հիմնադրամը, Կինոգետների և կինոլրագրողների հայկ. ընկերակցությունը 2004–ին Երևանում, գլխ. տնօրեն՝ Հարություն *Խաչատրյան*, 2017–ից՝ Սուսաննա *Հարությունյան* (2004–17–ին՝ գեղ. տնօրեն), ծրագրերի տնօրեն՝ Միքայել *Սրամբոլցյան*: Ամեն տարի ներկայացվում են 120–150 մրցութ. և արտամրցութ. ֆիլմեր՝ տարբեր ծրագրերով: Ունի 3 հիմն. անվանակարգեր՝ խաղարկ., վավերագր., հայկ. համայնապատկեր, 1 գլխ.՝ «Ոսկե ծիրան», և 1 հատուկ մրց–ներ:

«ՈՍԿԵ ԿԱՆՈՆ», «Մի՛ վարվիր ուրիշների հետ այնպես, ինչպես չես կամենա, որ քեզ հետ վարվեն» հնագույն բարոյախոս. պատվիրանը: Արտահայտել են Հին Արևելքի ու Հին Հունաստանի իմաստունները, ներառվել է նաև Ավետարան: Ի. Կանտն այն ձևափոխել ու զարգացրել է *կատեգորիկ իմպերատիվի* մասին իր ուսմունքում:

ՈՍԿԵ ՀԱՏՈՒԱԾ, **հարմոնիկ մասնահատում**, AC հատվածի մասնահատումն այնպիսի 2 մասերի, որոնցից մեծի՝ AB–ի հարաբերությունը փոքրին՝ BC–ին, հավասար է ամբողջ AC հատվածի հարաբերությանը մեծին՝ AB–ին, այսինքն՝ AB : BC = AC : AB: Այդ հարաբերությունը մոտավորապես հավասար է 5/3, ավելի ճիշտ՝ 8/5, 13/8 ևն: Ո. հ–ի սկզբունքն օգտագործում են ճարտ–յան և կերպարվ–ի մեջ: Եզրույթը ներմուծել է Լեոնարդո դա Վինչին:

ՈՍԿԵ ՀՈՐԴԱ (մոնղ.՝ ordo – ճամբար), **Ջուչիի ուլուս**, մոնղ–թաթար. պետություն: Հիմնադրել է *Բաթու խանը* XIII դ–ի 1–ին կեսին: Խան. իշխանությունը տարածվել է արմ–ում՝ ստորին Դանուբից և Ֆինն. ծոցից մինչև արլ.՝ Իրտիշի ավազանն ու ստորին Օբը, հվ–ում՝ Սև, Կասպից և Արալյան ծովերից ու Բալխաշ լճից մինչև հս՝ Նովգորոդյան երկիրը: Մայրաքաղաքն սկզբում Սարայ Բաթուն (ներկայի Աստրախանի մոտ) էր, XIV դ–ի 1–ին կեսից՝ Սարայ Բերքեն (ներկայի Վոլգոգրադի մոտ), հիմնադրել է Բերքե խանը:

ՈՍԿԵ ՁԿՆԻԿ, *արծաթափայլ կարասի* ենթատեսակ: Մարմինը կարճացած է, լայնացած, հաճախ՝ կարմրաոսկեգույն երանգով, լողակները՝ երկար: Տարածված են աքվարիում. շատ տեսակներ (հեռադիտակներ, շղարշապոչներ, մուշտակավորներ ևն):

ՈՍԿԵ ՁԿՆԻԿ (լատ.՝ Dorado), համաստեղություն երկնքի Հվ. կիսագնդում՝ Կենդանագիր, Թռչող Ձուկ, Մեղանասար, Հվ. Հիդրա, Ցանց, Ժամացույց, Դանակ համաստեղությունների միջև: Ո. Ձ–ում են *խավարածրի* հվ. բևեռը և Մագելանի մեծ ամպը (*Մագելանի ամպեր*):

ՈՍԿԵԱՁԻԿՆԵՐ, *ցանցաթևավորների* կարգի միջատների ընտանիք: Աչքերը դուրս պրծած են, ոսկեփայլ (այստեղից՝ անվանումը): Թևերի բացվածքը՝ մինչև 4 *սմ*: Հայտնի է մոտ 800 տեսակ՝ գրեթե ամենուրեք: Ավելի հաճախ հանդիպում են սովոր. և հասարակ Ո.: Թրթուրները ոչնչացնում են լվիճներին և որդաններին:

ՈՍԿԵԲԶԵԶՆԵՐ (Buprestidae), *բզեզների* ընտանիք: Երկ.՝ 3–100 *մմ*: Հայտնի է 12 հզ. տեսակ, ՀՀ–ում՝ 200 (սև, դեղձենու, բարդու, փոփոխ. ևն Ո.)՝ Տավուշի և Սյունիքի մարզերում, Արարատյան դաշտում: Թրթուրներն ապրում են ծառերի կեղևի տակ և բնափայտի մեջ: Անտառների և այգիների վնասատուներ են: Հազվադեպ են Պալլասի, Սողոմոնի, գեղեցիկ Ո.: Վերջին 2–ը գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

ՈՍԿԵԳՈՒՅՆ ԾԱԿԱՆ (Sabanejevia aurata), *ծականաձկների* ընտանիքի ձուկ: ՀՀ–ում հայտնաբերվել է Արաքս և Մեծամոր գետերում: Սարմինն օձանման է՝ կողքերից սեղմված: Երկ.՝ 5–8 (երբեմն՝ մինչև 10) *սմ*: Կենդանակեր է: Վարում է մերձափնյա. կենսաձև: Հազվադեպ հանդիպող տեսակ է:

ՈՍԿԵԳՈՒՅՆ ՄԵՂՎԱԿԵՐ (Merops apiaster), *մեղվակերների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, տարածված: Սարմնի երկ.՝ 27–29, թևերի բացվածքը՝ 44–49 *սմ*, կ. զ.՝ 41–68 *գ*: Փետրածածկը ցայտուն բազմերանգ է: Երամային է: Սնվում է միջատներով, առավելապես՝ մեղուներով և կրետներով: Ունի գեղեցիկ, ականջ շոյող սրնգային ձայն:

ՈՍԿԵԳՈՒՅՆ ՋՐԻՄՈՒՌՆԵՐ, տարամտրակավոր ջրիմուռների դաս՝ ոսկեգույն–գորշ գունավորմամբ: Միաբջիջ, գաղութ., առավելապես շարժուն օրգանիզմներ են, ինքնասուն, հազվադեպ՝ տարասուն: Հայտնի է մոտ 1000 տեսակ: Պլանկտոնի ներկայացուցիչներ են, օրգ. նյութերի կարևոր արտադրողներ: Երբեմն առաջացնում են ջրի «ծաղկում»:

ՈՍԿԵԳՈՒՅՆ ՏՐԱԽԻԼԵՊԻՍ (Trachilepys auratus), **ոսկեգույն մաբույա**, *սողունների* ընտանիքի Trachilepys ցեղի մողես: ՀՀ–ում տարածված է Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերում, Երևանի շրջակայքում: Սարմնի երկ–յունը տարիքի հետ փոխվում է (3,8–10,5 *սմ*), պոչը 1,2–1,5 անգամ մարմնից երկար է, ինքնահատվող: Ոչնչացնում է վնասատու միջատներին: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՈՍԿԵԳԱՐՉԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, **V դ–ի հայ գրականություն**, Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի համագործակցությամբ ու նրանց աշակերտների ջանքերով ստեղծած գրկ–յան անվանումը հայ մատենագիտ–յան մեջ: Հայկ. գրի գյուտով սկիզբ է դրվել թարգմ. գրկ–յանը, կարճ ժամանակում թարգմանվել են Աստվածաշունչը, Եվսեբիոս և Բարսեղ Կեսարացիների, Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Նազիանզացու և Հովհան Ոսկերերանի, Պլատոնի, Արիստոտելի և ուր. երկերը, ճառերը, քարոզներն ու մեկնություններ: Այդ շրջանում են իրենց երկերը գրել Կորյունը, Եզնիկ Կողբացին, Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին, Եղիշեն, Ղազար Փարպեցին:

ՈՍԿԵՋԱՆԳ, **ֆորզիցիա** (Forsythia), *ձիթենազգիների* ընտանիքի բազմամյա տերևաթափ թփերի ցեղ: Հայտնի է 8 տեսակ: ՀՀ–ում ծաղկաբուծության մեջ մշակվում է միջին Ո.: Ծաղիկները զանգականման են՝ վառ դեղինից ոսկեդեղին: Ծաղկում է վաղ գարնանը՝ մինչև տերևների բացվելը: Սերմերը թունավոր են: Լուսասեր է, ջերմա– և ցրտադիմացկուն: Գեղազարդիչ է:

ՈՍԿԵԾԱՂԻԿ (Clatha), **առյուծատունկ**, *գորտնուկազգիների* ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 40 տեսակ (այլ տվյալներով՝ 90), ՀՀ–ում՝ 2 (ճահճ. և բազմապսակաթերթը)՝ Շիրակի, Արագածոտնի, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և այլ մարզերում: Բույսն ամբողջությամբ թունավոր է. վտանգավոր է ձիերի և խեղ–ների համար: Ո–ի տերևները ժող. բժշկության մեջ օգտագործում են այրվածքների դեպքում: Գեղազարդիչ է:

ՈՍԿԵՀԱԶԱՐՈՒԿ (Centaurium), **դառնալեղի**, բոզազգիների ընտանիքի խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 40–50 տեսակ, ՀՀ–ում՝ 3 (հասկաձև, գեղեցիկ Ո–ներ և էրիթրեա)՝ Արարատի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և այլ մարզերում: Պարունակում է ալկալոիդներ և դառը գլիկոզիդներ. պատրաստուկներն օգտագործում են որպես ախորժարեր, մարսողությունը կարգավորող, հակաճիճվային միջոց:

ՈՍԿԵՂՋՅՈՒՐ, 1. ծովախորշ Բոսֆորի նեղուցի եվրոպ. ափի հվ–ում: Երկ.՝ 12,2 *կմ*, լայն. 91–122 *մ*, խոր.՝ 47 *մ*: Մատչելի է խոշոր ծով. նավերի համար: Ո–ի ափերին է *Սկամբույլը*: 2. Ծովախորշ՝ *Պետրոս Մեծի ծոցում* (Հապոն. ծով)՝ Մուրավյով–Ամուրսկի թ–կղզու հվ. ափին: Ունի եղջերաձև տեսք: Լավ պաշտպանված է քամիներից: Երկ.՝ ավելի քան 7 *կմ*, լայն.՝ ավելի քան 2 *կմ*, խոր.՝ 20–30 *մ*: Ո–ի ափերին է *Վլադիվոստոկը*:

ՈՍԿԵՇԻՎ (Solidago), **ամրենի**, աստղածաղկազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի, հազվադեպ՝ կիսաթփերի ցեղ: Հայտնի է 100 (այլ տվյալներով՝ 120) տեսակ, ՀՀ–ում՝ 1 (սովոր.)՝ Արագածոտնի, Կոտայքի, Լոռու, Սյունիքի և այլ մարզերում: Դեղաբույս է, պարունակում է եթերայուղ, ճարպայուղ, աղաղանյութեր, թթուներ, կարոտին, ինուլին ևն: Պատրաստուկներն օգտագործում են երիկամների, երիկամաքար. և լեղաքար. հիվանդությունների, տուբերկուլոզի, լուծի, բրոնխ. հեղձուկի, թարախ. վերքերի, անգինայի և այլ դեպքերում: Որոշ տեսակներ գեղազարդիչ են: Թունավոր է, մեղրատու և ներկատու:

ՈՍԿԵՊԱՐ (ստորին հոսանքում՝ Ձողաս), գետ ՀՀ Տավուշի մարզում, Աղստևի ձախ վտակը: Սկիզբ է առնում Գուգարաց լ–շղթայի Չաթին լ–գագաթի հս. լանջից՝ 1975 *մ* բարձր–ից: Երկ.՝ 59 *կմ*, ավազանը՝ 510 *կմ*^{2} (ՀՀ–ում, համապատասխանաբար՝ 33 *կմ* և 443 *կմ*^{2}), ջրի միջին ծախսը՝ 1,32 *մ*^{3} (Ոսկեպար գ.), առլճ՝ 62,2 *մ*^{3} (21.06.1986): Մնումը հիմնականում անձրևային (43 %) և հալոցքային (34 %) է, վարարումը՝ ապրիլ–հուլիսին, որի ընթացքում ձևավորվում է տարեկան հոսքի 71 %–ը: Ստորին հոսանքում կառուցված է Ձողասի ջրամբարը:

ՈՍԿԵՊԱՐԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Գուգարաց լ–շղթայի հս–արլ. ճյուղավորությունը՝ ՀՀ Տավուշի մարզում: Սկսվում է Գոմշավար լ–գագաթից (1961 *մ*), աստիճանաբար ցածրանալով՝ ձուլվում Կուրի հովտին: Երկ.՝ 25 *կմ*: Կազմված է յուրայի հրաբխածին ապարներից: Ոսկեպար և Կողբ գետերի ջրբաժանն է: Ծածկված է հաճարենու անտառներով և չոր թփուտներով:

ՈՍԿԵՊԱՐԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, VI–VII դդ–ի ճարտ. հուշարձան ՀՀ Տավուշի մարզի Ոսկեպար գ–ի տարածքում: Քառախորան գմբեթավոր եկեղեցի է՝ պսակված ութանիստ թմբուկ ունեցող գմբեթով: Ավագ խորանին 2 կողմից կից են ուղղանկյուն հատակագծով ավանդատները: Թմբուկի նիստերը մշակված են անկյունների զույգ կիսասյուներից բարձրացող զարդակամարներով: 1975–77–ին նորացվել են քիվերը, սալապատվել տանիքն ու վեղարը:

ՈՍԿԵՎԱՐՄԱԿ (Trisetum), *դաշտավլուկազգիների* ընտանիքի բազմամյա, հազվադեպ՝ միամյա բույսերի ցեղ: Հայտնի է 10–15 (այլ տվյալներով՝ 50–60) տեսակ, ՀՀ–ում՝ 3 (կոշտ, մանրահասկանման, թուրք.)՝ Կոտայքի, Արագածոտնի մարզերում, Երևանի շրջակայքում: Արժեքավոր կերաբույս է, օգտագործելիս առաջացնում է ամուր ճիմ:

ՈՍԿԵՏՏԻԿՆԵՐ, *թիթեռների* ընտանիք: Թևերը բացվածքում՝ 20–100 *մմ*: Հայտնի է 3000 տեսակ՝ արևադարձ. և մերձարևադարձ. անտառներում: Բազմաթիվ Ո. անտառի և այգիների (լայնատերև, այդ թվում՝ պտղատու, բնափայտային ծառերի, հատկապես՝ կաղնու) վնասատուներ են՝ Եվրասիայում, Հս. Աֆրիկայում և Հս. Ամերիկայում: Թևերն սպիտակ են, առջևինները՝ երբեմն սև կետերով: Սնվում են բողբոջներով և տերևներով:

ՈՍԿԵՐՉՅԱՆ Աստղիկ Գիսակի (ծ. 1947), գոբելենագործուհի: Հեղինակ է գուն. հազեցվածությամբ, թարմ արտահայտչաձևերով գոբելենների («Ղողանջ», 1978, «Շախմատ», 1979, «Գինի», «Դեպի լույս», երկուսն էլ՝ 1983, «Պահապան հրեշտակ», 1990, «Կարոտ», 2002, ևն):

ՈՍԿԵՐՉՅԱՆ Արտաշես Կարապետի (1908–1993), գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1966), պրոֆ. (1967): Հեղինակ է «Մտ. Շահումյանի գրական հայացքները» (1947), «Սովետահայ գրականության և գրական ժառանգության հարցեր» (1954), «Քննադատություն և հրապարակախոսություն» (1968), «Ռուս գրականություն: Ակնարկներ» (1977), «Ռուս և հայ գրականության հարցեր» (1982) և այլ աշխ–ների:

ՈՍԿԵՐՉՈՒԹՅՈՒՆ, թանկարժեք (ոսկի, արծաթ, պլատին), նաև որոշ գունավոր մետաղներից գեղ. կերտվածքներ ստեղծելու արհեստի և արվ–ի տեսակ՝ հաճախ *թանկարժեք քարերի* օգտագործումով (տես *Ակնագործություն*): Հին Հայաստանում Ո–յան արվ–ն ունեցել է բարձր մակարդակ (որսորդի ոսկե արձանիկ, Լճաշեն, մ. թ. ա. I հզ–ամյակ):

Ո–յան նշանավոր կենտրոններից էին Դվինը, Անին, Կարսը, Երզնկան, Կ. Պոլիսը, Շուշին, Ախալցխան, Երևանը ևն: Հայկ. Ո–յան առանձնահատկությունները զարգացրել (Ն. Գույումջյան, Ժ. Չուլոյան, Ա. Բերբերյան), ժամանակակից ճաշակ են ներմուծել հայ արդի վարպետները (Ժ. Մազլումյան, Ռ. Եսայան, Է. Կակոսյան, Ռ. Թելումյան և ուր.): 1964–ից Երևանում գործում է ոսկերչ. գործարան, 1998–ին հիմնադրվել է Հայ ոսկերիչների համաշխ. միություն, որի նպատակը Սփյուռքի և ՀՀ

ոսկերիչներին համախմբելն է, նաև բարեգործ. ցուցահանդեսներ կազմակերպելը:

ՈՍԿԻ (Aurum), Au, տարրերի պարբեր. համակարգի I խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 79, ա. զ.՝ 196,9665: Ազնիվ մետաղ է, դեղին, կռելի, խտ.՝ 19,32 *գ/սմ*^{3}, $t_{հալ}$՝ 1064,4°C: Քիմիապես իներտ է, նույնիսկ օդում տաքացնելիս չի փոխոխվում: Բնության մեջ հանդիպում է բնածին Ո.: Սովորաբար օգտագործվում է այլ մետաղների հետ համաձուլվածքների ձևով, որոնք կարծր են և ամուր: Ո–ու և պլատինի համաձուլվածքից պատրաստում են քիմիապես կայուն սարքավորումներ, իսկ պլատինի և արծաթի հետ համաձուլվածքից՝ հատուկ նշանակության սարքերի էլ. հպակներ: Ո. և նրա համաձուլվածքներն օգտագործում են ոսկեզօծման, ոսկերչ. զարդեր և ատամի պրոթեզներ պատրաստելու համար: Ճառագայթաակտիվ իզոտոպը՝ ^{198}Au, կիրառում են ուռուցքների ճառագայթաբուժության մեջ: Ո. հիմն. արտարժութ. մետաղ է: Ո–ու պարունակությունը ոսկերչ. զարդերում, դրամներում, մեդալներում արտահայտում են հարգով:


Իր բնական հատկանիշների շնորհիվ Ո. վաղ անցյալից ձեռք է բերել դրամի դեր, շրջանառել է ձուլածոների և մետաղադրամների ձևով (մ. թ. ա. VII դ–ից): Ո–ու՝ որպես դրամի, դերն առավել ամրողջական է դրսևորվել ***ոսկու չափորոշիչով***: 1976–ին ԱՄՀ–ն ապադրամայնացրել է Ո.: Չնայած ժամանակակից ոչ մի երկրում ոսկե դրամներ չեն շրջանառում, բայց Ո. մնում է որպես պահուստ. արժույթների ձեռքբերման ապահովագր. ֆոնդ:

ՈՍԿԻ ԲՆԱԾԻՆ, միներալ, արծաթի (մինչև 43 %) բնական պինդ լուծույթը ոսկում՝ Cu–ի, Fe–ի և այլ տարրերի խառնուրդներով: Վառ դեղին է, խառնուրդներից կախված՝ փայլատ դեղին, կարմրավուն, կանաչավուն: Առաջացնում է հատիկային, հոծ զանգվածներ: Կարծր.՝ 2–3, խտ.՝ 15,6–19,2 *գ/սմ*^{3}: Ըստ մասնիկների մեծության՝ զանազանում են՝ նուրբ դիսպերսային, փոշենման, մանր ու խոշոր: 5 *գ*–ից ավելի կշիռ ունեցողները կոչվում են բնածիններ, որոնց զանգվածը երբեմն հասնում է տասնյակ և հարյուրավոր *կգ*–ի:

ՈՍԿԻՅԱՆ Կարապետ Արիստակեսի (1869–1901), գրող: Հեղինակ է բանաստեղծությունների, նովելների: Ո–ի սիրո և բնության երգերն ամփոփված են «Սրտի ժամեր» (1911) ժող–ում:

ՈՍԿԻՅԱՆ Համազասպ (ավազանի անունը՝ Անտոն, 1895–1968), պատմաբան, բանասեր, ձեռագրագետ, մանկավարժ, խմբ.: ՎենմՄ անդամ (1914–ից): Վիեննայի համալսարանի աստվածաբանության դ–ր (1922): 1931–37–ին՝ Պլովդիվի, 1947–60–ին՝ Բեյրութի Մխիթարյան վարժարանների տնօրեն: 1938–46 և 1963–68–ին՝ ***«Հանդէս ամսօրեայ»***–ի խմբագրապետ, 1932–ին՝ ***«Ուսումնասիրաց»*** ամսագրի հիմնադիր–խմբ.: Հեղինակ է հայկ. վանքերի, հայ նախարար. տոհմերի մասին աշխ–ների, «Յովհաննէս Վանական եւ իւր դպրոցը» (1922), «Մատենագրական քննութիւններ (1926), «Չորս հայ տաղասացներ եւ անոնց տաղերը» (1966) և այլ երկերի: Աշխատասիրել և հրատարակել է «Երգ երգոցի առաջին եւ երկրորդ թարգմանութիւնը» (1924), «Սարդիկէի ժողովի հայերէն կանոնները» (1945), Ստեփանոս Ռոշքայի (1964), Հովհաննես Դրիմեցու (1965) ուսումնասիրությունները, կազմել է «Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա» (հ. 2, 1963), նաև հայոց պատմության դպրոց. ձեռնարկներ (հ. 1–5, 1959–60, ևն):

ՈՍԿՐ, մարդու և ողնաշարավոր կենդանիների կմախքի հիմն. տարրը: Ոսկր. հյուսվածքը շարակց. հյուսվածքի տարատեսակ է, կազմված է կալցիումի աղերից և նրա ամրությունն ու առաձգականությունն ապահովող սպիտակուցներից (հիմնականում՝ կոլագենից): Հողերի, կապանների, մկանների և Ո–ին ամրացած ջլերի հետ առաջացնում է հենաշարժ. ապարատը: Կոտրվածքներից հետո Ո. վերականգնվում է վերնոսկրի բջիջների կիսման ճանապարհով:



Խողովակավոր ոսկրի կառուցվածքի սխեմա. 1. դիաֆիզ, 2. էպիֆիզ, 3. ոսկրածուծային խոռոչ, 4. վերնոսկր, 5. վերնաշառ, 6. հոդաշառ, 7. ոսկրի սպունգանման նյութ, 8. ներաշառային ոսկր, 9. աճման թիթեղ

ՈՍԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **օստեոլոգիա** (< հուն. osteon – ոսկոր և *...լոգիա*), ***անատոմիայի*** բաժին. ուսումնասիրում է ոսկր. կմախքի կառուցվածքը, զարգացումը և փոփոխությունները: Տարբերում են ընդհ. և մասնավոր, համեմատ. և տարիք. Ո.: ***Մարդաբանության*** մեջ ուսումնասիրում է մարդու ամրողջ. կմախքի, նաև առանձին ոսկրերի չափերի և ձևերի փոփոխականությունը: Ո–յան տվյալներն օգտագործվում են հնէամարդաբանության, ռասայագիտ–յան մեջ:

ՈՍԿՐԱԲԱՋԻՔՆԵՐ, **օստեոցիտներ**, մարդու և ողնաշարավոր կենդանիների ոսկր. հյուսվածքի տարբերակված հասուն բջիջները:

ՈՍԿՐԱԾՈՒԽ, մարդու և ողնաշարավոր կենդանիների ոսկր. խոռոչները լցնող հյուսվածքը: Տարբերում են կարմիր և դեղին Ո–եր: Կարմիր Ո–ում (հիմն. արյունաստեղծ օրգան), որը կյանքի առաջին տարիներին լցնում է ոսկրերի բոլոր խոռոչները, զարգանում են արյան ձևավոր տարրերը՝ էրիթրոցիտները, լեյկոցիտները և թրոմբոցիտները, ինչպես նաև Ո–ային լիմֆոցիտները: 3–4 տարեկանից սկսած՝ կարմիր Ո. աստիճանաբար վերածվում է դեղին Ո–ի, որտեղ գերակշռում են ճարպ. բջիջները:

ՈՍԿՐԱԾՈՒԽԱԲՈՐԲ, **օստեոմիելիտ** (< *օստեո...* և հուն.՝ myelos – ոսկրածուծ), ***ոսկրածուծի*** բորբոքում, երբ ախտահարվում են ոսկրի բոլոր շերտերը: Լինում է արյունածին (հեմատոգեն), որն առաջանում է արյան հոսքով ոսկրածուծի մեջ թափանցած միկրոօրգանիզմներով, և վնասվածքային (հատկապես՝ հրազեն.), բարդացնում է ոսկրերի վնասվածքների ընթացքը: Ընթանում է սուր և քրոնիկ. ձևերով:

ՈՍԿՐԱՀԱՏՈՒՄ, **օստեոտոմիա** (< *օստեո...* և հուն.՝ tome – կտրվածք, հատում), ոսկրերի բնածին կամ ձեռքբերովի ձևախախտումների շտկման վիրահատություն:

ՈՍԿՐԱՓՈՒԽ, **կարիես** (լատ.՝ caries – փտում), ***ոսկրի*** կամ ատամի հյուսվածքի աստիճան. քայքայումը՝ տարած. (դիստրոֆիկ) կամ վարակ. կենսընթացների հետևանքով: Ատամների Ո. մարդու ամենատարածված հիվանդություններից է, որն առաջացնում է ատամի արծնի և դենտինի արատ: Բուժումը՝ ախտահարված հյուսվածքների հատում և արատի լիցք:

ՈՍԿՐՈՏ ՁԿՆԵՐ (Teleostei), ոսկր. ձկների վերնակարգ: Մարմնի երկ.՝ 1 *սմ*–ից (որոշ գլիկաձկներ) մինչև 5 *մ* (լոքոներ, թրաձկներ, թյունիկներ): Հայտնի է 33 կարգ՝ ժամանակակից բոլոր ձկնատեսակների 90 %–ից ավելին: Ծով., քաղցրահամ ջրերի, գաղթող և կիսագաղթող ձկներ են: Արդյունագործ. գրեթե բոլոր ձկները պատկանում են Ո. ձ–ի շարքին:

ՈՍԿՈՒ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ, պետությանը (զանձարանին և կենտր. բանկին) պատկանող ձուլածո ոսկին և ոսկե դրամները, օտարերկրյա արժույթը, ինչպես նաև օտարերկրյա բանկերի հաշիվներում գտնվող արժույթը: ՀՀ–ն 2003–ից Ո. ա. պ–ներ չունի, եղած շուրջ 1,4 *տ* ոսկին վաճառվել է 17 մլն դոլարով:

ՈՍԿՈՒ ՀԱՆԴՔԱՎԱՅՐԵՐ, հիմնականում՝ բնածին, հազվադեպ՝ թելուրիդների տեսքով ոսկի պարունակող հանքավայրեր: Տարբերում են ոսկի–սուլֆիդա–քվարց. (Au–ի պարունակությունը՝ 10–1000 *գ/տ*) և գլխավորապես սուլֆիդ. (սովորաբար՝ 1–2 *գ/տ*) Ո. հ.: Յրոն. հանքավայրերում Au–ի պարունակությունը մի քանի տասնյակ *մգ/մ*^{3}–ից մինչև *կգ/մ*^{3} է: Հանքավայրերի առանձին տիպ են փոխակերպ. գրոնները: Համաշխ. ընդհ. պաշարները՝ շուրջ 90 հզ. *տ*: Գլխ. արդյունահանող երկրները՝ ՀԱՀ, ՌԴ, Ավստրալիա, Կանադա, ԱՄՆ, Գանա ևն: Տարեկան արտադր–յունը՝ շուրջ 2 հզ. *տ*: Ո. հ. կան նաև Հայաստանում և Արցախում, որոնց ընդհ. պաշարները կազմում են ավելի քան 1000 *տ*:


ՈՍԿՈՒ ՇՈՒԿԱՆԵՐ, հատուկ կենտրոններ, որտեղ տեղի է ունենում ***ոսկու*** կանոնավոր վաճառք: Ոսկու առևտրի, նրա զտման ու ձուլակտորների պատրաստման բանկերի և մասնագիտացված ֆիրմաների միավորումները: Գլխ. Ո. շ. են Լոնդոնը և Յուրիխը: Ոսկու գինը այդ շուկաներում համարվում է ոսկու համաշխ. գին:

ՈՍԿՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉ, բազմաթիվ երկրներում ձևավորված դրամ. համակարգ XIX դ–ի վերջին, երբ միայն ոսկին է ընդունվել որպես համընդհ. չափորոշիչ և դրամաշրջանառության անմիջական հիմք: Ո. չ–ի դաս. ձևը եղել է ոսկե դրամների չափորոշիչը, երբ դրանք անսահմանափակ հատվել, շրջանառել և ազատ փոխանակվել են թղթադրամների հետ: Ո. չ–ի այդ ձևը վերացել է ԱՀՊ–ի ժամանակ: 1920–ական թթ–ին վերականգնվել է ոսկե ձուլածոների և ոսկու արժութ. համակարգի ձևով, բայց ոսկե դրամների շրջանառություն չի իրականացվել: Բանկ. կտրոնների խոշոր գումարները փոխանակվել են 12–14 *կգ* զանգվածով ոսկու ձուլածոների կամ օտարերկրյա արժույթի հետ, որը, իր հերթին, փոխարկվել է ոսկու ձուլածոների: Ո. չ. լրիվ վերացել է 1929–33–ի համաշխ. տնտ. ճգնաժամի պատճառով:

ՈՍՊ (Lens), ***բակլազգիների*** ընտանիքի միամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 20 տեսակ՝ ՀՀ–ում՝ 3 (ոսպնյականման, արլ. և ուտվող): Առաջին 2–ը վայրած հանդիպում են Սյունիքի, Վայոց ձորի, Արարատի մարզերում: Գրանցված են ՀՀ Կարմիր գրքում: Մնդ. Ո. կարելի է մշակել գրեթե բոլոր մարզերում: Սերմերը պարունակում են սպիտակուցներ, օսլա, ճարպ, վիտամիններ:

ՈՍՊՆՅԱԿ օպտիկայում, լուսաթափանց նյութից՝ ուռուցիկ կամ գոգավոր մակե–

րևույթներով (մակերևույթներից մեկը կարող է լինել հարթ) սահմանափակված մարմին, որը կարող է փոխակերպել լույսի փնջի ձևը: Տարբերում են հավաքող (դրական) և ցրող (բացաս.) Ո-ներ (նկ.): Տեսանելի լույսի Ո. սովորաբար պատրաստում են ապակուց, ԱՄՁ-ման դեպքում՝ քվարցից, լիթիումի ֆտորիդից ևն, ԵԿՁ-ման դեպքում՝ կայծքարից, գերմանիումից, լիթիումի ֆտորիդից ևն:



Ոսպնյակներ. ա. հավաքող, բ. ցրող

ՈՍՊՆՅԱԿ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ, էլեկտրոն. փնջերի կիզակետման համար նախատեսված քվազիստատիկ էլ. կամ մագնիս. դաշտ ստեղծող էլեկտրոնաօպտիկ. սարք: Օգտագործվում է էլեկտրոն. մանրադիտակներում, էլեկտրոնաօպտիկ. սարքերում և այլուր:

ՈՍՊՆՅԱԿ ՁԱՅՆԱԿԱՆ, ձայն. փնջի զուգամիտության փոփոխման հարմարանք: Սահմանափակված է 2 աշխ. մակերևույթներով: Ո. ձ. լինում է պինդ, հեղուկ և գազանման: Օդ. ոսպնյակները կիրառում են բարձրախոսների ուղղորդվածության բնութագրերի բարելավման համար:

ՈՍՊՆՅԱԿ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ, մագնիս. դաշտի միջոցով լիցքավորված մասնիկների փնջերը կիզակետող սարք: Էլեկտրոն. ոսպնյակի (տես *Ոսպնյակ էլեկտրոնային)* տարատեսակներից է:

ՈՍՊՆՅԱԿԻ ՄԹԱԳՆՈՒՄ, **կատարակտ** (հուն.՝ katarraktes – ջրվեժ), առաջանում է աչքի հյուսվածքների սնուցման ծերուն. խանգարումների, շաքարախտի, աչքի վնասվածքների և այլ պատճառներով: Խիստ նվազեցնում է տեսողությունը:

ՈՍՊՆՈՒԿՆԵՐ (Rhodopechidae), *ներհնոսների* ընտանիքի թռչունների սեռ: Երկ.՝ մինչև 20 *սմ*: Արուների գունավորման մեջ գերակշռում են կարմիրի երանգները: Հայտնի է մոտ 20 տեսակ, ՀՀ-ում՝ 2 (կարմրաթև և սովոր. Ո.):

ՈՍՏԱՅՆԱԲՈՐԲ, **արախնոիդիտ** (< հուն.՝ arachne – սարդ և eidos – տեսակ), գլխուղեղի կամ ողնուղեղի ոստայնաթաղանթի (մասամբ՝ նաև անոթաթաղանթի) վնասվածքներ, բորբոքում: Պատճառները՝ վարակիչ հիվանդություններ, թունավորումներ: Գլխուղեղի Ո. դրսևորվում է գլխացավերով, փսխումներով, ջղաձգության նոպաներով, տեսողության և լսողության նվազմամբ ևն, ողնուղեղի Ո.՝ վերջույթների ցավերով, զգացողության խանգարումներով ևն:

ՈՍՏԱՆ, թագավորի ժառանգ. և անօտարելի տիրույթների ընդհանր. անվանումը Հին Հայաստանում: Նեղ իմաստով՝ Ո. են կոչվել երկրի վարչաքաղ. կենտրոններն *Այրարատում* (Արտաշատ, Դվին, Վաղարշապատ):

ՈՍՏԱՆ, Ոստան Ռշտունյաց, բք Վասպուրական նահանգի *Ռշտունիք* գավ-ում՝ Վանա լճի հվ. ափին (Աղթամար կղզու դիմաց): Հիշատակվում է ուրարտ. արձանագրություններում (մ. թ. ա. IX–VII դդ.): Մինչև արաբ. նվաճումները (VII դ-ի կես) եղել է Ռշտունիների ձեռքում: VIII դ-ի վերջին այն արաբներից ազատագրել և իրենց կենտրոնն են դարձրել Արծրունիները: X դ-ի սկզբին *Գագիկ Արծրունին* Ո. դարձրել է իր գահանիստը: Արծրունյաց թագավորության անկումից (1021) և սելջուկ-թուրքերի նվաճումներից հետո (XI դ-ի կես) Ո. ենթարկվել է ավերածությունների: 1424-ին այն կործանել է կարա-կոյունլուների առաջնորդ Իսկանդար ամիրան:

«ՈՍՏԱՆ», գր., գիտ. և մշակութ. հանդես (1911–12, 1919–28, Կ. Պոլիս): Խմբ-ներ՝ Միքայել Շամտանճյան, Տիգրան Չոկյուրյան:

ՈՍՏԱՆ ՀԱՅՈՑ, **Ոստան Դրվնո**, գվո Այրարատ նահանգ-ում՝ Ազատ գետի ստորին հոսանքում: Համապատասխանում էր Մեծ Հայքի թագավորության գահանիստ *Արտաշատ* ու *Դվին* մայրաքաղաքներին և դրանց շրջակայքին:

ՈՍՏԱՆԻԿՆԵՐ, ազնվական. կրտսեր դաս վաղ միջնադար. Հայաստանում: Մեծ մասամբ սերել են Արշակունիների արքայատոհմից, կալվածներ ստացել *ոստանից*: Եղել են թագավորի առավել վստահելի վասալները, համալրել ոստանիկ (արքունի) հեծելազունդը, վարել են պալատ. պաշտոններ: Հետագայում հավասարեցվել են *ազատներին* և ազնվական. մյուս դասերին:

Փխբ. իմաստով՝ «Ո.» նշանակել է քաղաքակիրթ, բարեկիրթ, մշակված: «Ոստանիկ լեզու» է կոչվել արքունի տիրույթներում, ապարանքներում խոսվող մշակված ու ճոխ լեզուն:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀՀ, կազմավորվել է 2003-ին՝ 1991-ին հիմնադրված միլիցիայի (հետագայում՝ ՆԳՆ-ի) բարձրագույն դպրոցի հիմքի վրա: 2000–03-ին՝ ՆԳՆ ակադ.: Պատրաստում է ոստիկանության կադրային մասնագետներ և գիտամանկավարժ. կադրեր: Ակադ-ի պետեր՝ գնդ-ներ Ռաֆայել Ասլանյան, Սերգեյ Մկրտչյան, Աշոտ Գրիգորյան, Վարուժան Մելքոնյան, փոխգնդ. Արա Օսկանյան, Աշոտ Գնդոյան, գնդլեյտ. Հովհաննես Վարյան (2009–ից):

ՈՍՏՐԵՆԵՐ (Ostreidae), երկփեղկանիների դասի ծով. փափկամարմինների ընտանիք: Մարմնի երկ. սովորաբար՝ 6–8 *սմ*, մի մասինը՝ մինչև 45 *սմ*: Հայտնի է մոտ 50 տեսակ: Տարածված են լայնորեն, առավել բազմազան են արևադարձ. ծովերում: Հաճախ ծանծաղուտներում առաջացնում են զանգված. կենսավայր՝ ոստրեների բանկ: Որոշ Ո. բուծվում, արդյունահանվում են: Օգտագործվում են սննդում՝ թարմ կամ պահածոյացված:

«ՈՎ, ՈՎ Է. ՀԱՅԵՐ», կենսագր. հանրագիտարան 2 հատորով (հ. 1, 2, 2005, 2007, «Հայկական հանրագիտարան. հրատարակչություն»): Գլխ. խմբ.՝ Հովհաննես Այվազյան:

ՈՎԱՆԵՍ, ճարտ.: Կառուցել է Այրարատ նահանգ-ի Արագածոտն գավ-ի Քաղենի ամրոցի (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզի Դաշտադեմ գ-ից մոտ 2 *կմ* հվ-արմ.) հնագույն Դղոտալ միջնաբերդի (հավանաբար՝ VII դ.) 8 կիսաշրջանաձև բուրգերով պարիսպը (հավանաբար՝ XII–XIII դդ.):

ՈՏ (pes), **ոտնաթաթ**, ստորին վերջույթի սրունքին հաջորդող ծայրամաս. հատվածը: Կատարում է մարմնի հենարանի ու զսպանակի դեր: Ո. բաժանվում է 3 մասի՝ գարշապար, նախագարշապար և մատներ: Շարժումներն իրականացնում են սրունքի, իսկ մատներինը՝ սրունքի և Ո-ի մկանները: Ո-ի ձևափոխություններից ավելի հաճախ հանդիպում են տափակաթաթությունը, ծռաթաթությունը (դեպի դուրս և դեպի ներս):

ՈՏՆԱՇՈՇԱՓՈՒԿՆԵՐ, **պեդիպալպներ** (< լատ. pes, սեռ. հոլ.՝ pedis – ոտք և palpus – շոշափուկ), *սարդակերպների* գլխակրծքի հատվածավոր վերջույթների 2-րդ զույգը: Կատարում են կերը որսալու և ծամելու, շոշափման գործառույթներ:

ՈՏՆԱՊՈՂՆԵՐ, **կոլեմբոլներ**, էնտոգնատ միջատների կարգ: Երկ.՝ 0,2–10 *մմ*: Հայտնի է 3500 տեսակ: Ապրում են հողում, կեղևի տակ, մնկերի մեջ, երբեմն՝ ջրի վրա: Մեծ մասն օգտակար է որպես հողառաջացնողներ, մի մասը՝ բույսերի (հիմնականում՝ ընդավորների) վնասատուներ են, կան նաև գիշատիչներ:

ՈՏՆԱՅՈՒՊԻԿ (Himantopus himantopus), բզկտուցավորների ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող: Մարմնի երկ.՝ 35–40, թևերի բացվածքը՝ 67–83 *սմ*, կ. զ.՝130–150 *գ*: Ապրում է լճափերին, ծանծաղ ճահճուտներում: Մնվում է ջր. միջատներով, բնադրում են առանձին զույգերով, նաև փոքր գաղութներով: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՈՐԱԿ, փիլ. կատեգորիա, որն արտահայտում է առարկաների և երևույթների հարաբեր. կայունությունը՝ նրանց ինքնությունը, որով յուրաքանչյուրը տարբերվում է մյուսներից: Տես նաև *Քանակական փոփոխություններից անցում որակական փոփոխությունների*:

ՈՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, քիմ. նյութի կամ նրա բաղադրիչների հայտնաբերումը (նույնականացումը): Քիմ. վերլուծության հիմն. տեսակներից է: Կարևոր առանձնահատկություններն են՝ յուրահատկությունը, որոնվող բաղադրիչի հայտնաբերման հնարավորությունը խառնուրդների ներկայությամբ և բաղադրիչի նվազագույն զանգվածը կամ նվազագույն կոնցենտրացիան:

ՈՐԲԵՐՅԱՆ (Ալիքյան) Ռուբեն (1874–1931), բանաստեղծ, լրագրող, թարգմանիչ: 1920-ից՝ Ֆրանսիայում: Հեղինակ է «Յիշատակաց ծաղիկներ» (1893) բանաստեղծությունների ժող-ի, «Ծփանքներ» (1906) պոեմի, «Ովասիս» (1920) հատընտիրի, «Լորտ Պայրըն» (1932, «Բազմավէպ») աշխ-յան: Թարգմանել է Ջ. Բայրոնի գործերից:

ՈՐԲՈՒՆԻ Զարեհ (Էդքսուզյան Զարեհ Մարտիրոսի, 1902–1981), գրող, խմբ.: 1924-ին Մարսելում խմբագրել է «Նոր հաւատք» հանդեսը, 1938–39-ին Փարիզում՝ *«Լուսաբաց»* (երկուսն էլ՝ Պետրոս Զարոյանի հետ) պարբ-ը: 1947–49-ին՝ *«Հայ կին»* ամսաթերթի խմբ.: Հեղինակ է «Հալածուածները» վիպաշարի («Փորձ», 1929, «Թեկնածուն», 1967, «Ասֆալթը», 1972, «Տարօրինակ օր մը», 1973), «Վարձու սենեակ» (1939), «Անձրևոտ օրեր» (1958), «Գոհարիկ եւ ուրիշներ» (1966) պատմվածքների ժող-ների, «Եւ եղեւ մարդ» (1964) վեպի:

ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ (Porphyrophora hamelii), **կարմրորդ**, *կոկցիդների* ենթակարգի տարբեր ընտանիքների միջատներ, որոնց էգերն օգտագործում են կարմիր ներկի՝ *կարմինի* ստացման համար: ՀՀ-ում տարածված է 3 տեսակ, որոնցից առավել արժեքավոր է արարատյան Ո. կ., որ հանդիպում է Արարատյան դաշտի աղուտներում: Ներկատու միջատներից ամենախոշորն է: Էգերի մարմնի երկ.՝ 4–12, արուներինը՝ 2–3 *մմ*: Ներկանյութ ստանալու նպատակով Ո. կ. հավաքում են սեպտ–հոկտ-ի սկզբներին, երբ դուրս է գալիս հողի մակերես: Պահպանության համար ՀՀ Արմավիրի մարզում ստեղծվել են արգելավայրեր: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՈՐԴԱՆԽՈՍ (Aeluropus), *դաշտավլուկազգիների* ընտանիքի կոճղարմատավոր բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 5 տեսակ, ՀՀ–ում՝ 1 (աղասեր Ո.)՝ Արմավիրի, Արարատի և Սյունիքի մարզերում: Տերևների և ցողունների վրա տեղակայված գեղձերի միջոցով Ո. արտազատում է աղեր: Ո–ի բուսուտներն օգտագործում են *որդան կարմիր* միջատի կերակրման համար: Ո–ի մաքուր համակեցություններից ստացվում է 8–9 *գ/հա* խոտ:

ՈՐԴԱՆՄԱՆ ԵԼՈՒՆ, **ապենդիքս** (լատ.՝ appendix – ելուն), կույր աղիի որդանման գոյացություն: Տարածված է Ո. ե–ի բորբոքումը (**ապենդիցիտ**), որի ընթացքը սուր է կամ քրոնիկական: Սուր Ո. ե–ի ախտանշաններն են՝ որովայնի, առավելապես՝ աջ զստափոսի շրջանի ցավերը, սրտխառնոցը, փսխումները ևն: Բարդությունները՝ ելունի թափածակում (պերֆորացիա) և որովայնամզաբորբ (պերիտոնիտ): Բուժումը՝ վիրաբուժ.:


ՈՐԴԱՆՄԱՆ ԿՈՒՅՐ ՕՁ (Typhlopidae vermicularis), *կույր օձերի* ընտանիքից: ՀՀ–ում հանդիպում է Արմավիրի, Արագածոտնի, Վայոց ձորի, Սյունիքի ու Տավուշի մարզերի նախալեռներում, Երևանի շրջակայքում: Վարում է բացառապես փորող կենսակերպ: Արտաքինից նման է *անձրևորդին*: Մարմնի երկ–յունը տարիքի հետ փոխվում է (5–41 *սմ*): Մարմինը կիսաթափանցիկ է: Մնվում է մրջյուններով, նրանց ձվերով, թրթուրներով ու հարսնյակներով: Հազվադեպ խնամվում է անազատ պայմաններում, օգտագործվում է ԳՀ նպատակներով:

ՈՐԴԱՆՆԵՐ, կոկցիդների ենթակարգի հավասարաթև կնճիթավոր միջատների ընդհ. անվանումը: Հայտնի է մոտ 1600 տեսակ՝ առավելապես արևադարձներում: Ընդգրկում է օրտեգիաների, հսկա, ալրավոր, զույգզեղձանի Ո–ի և թաղիքավորների ընտանիքները: ՀՀ–ում հայտնի է 150 տեսակ: Մեծ մասը պտղատու, գեղազարդիչ ծառերի, թփերի, տեխ. բույսերի վնասատուներ են: Առավել տարածված են Կոմստոկի, խոզանավոր, խաղողի ալրավոր և այլ տեսակներ: Կան նաև օգտակարներ, որոնցից ստանում են արժեքավոր նյութեր՝ շելակ, կարմիր ներկ: Տես նաև *Որդան կարմիր*:

ՈՐԴԵԳՐՈՒՄ (ընտանեկան իրավունքում), իրավաբ. գործողություն, որով որդեգրողի և որդեգրվողի միջև սահմանվում են ծնող. և որդիական իրավունքներ ու պարտականություններ: ՀՀ–ում հաստատվել է երեխայի որդեգրման կարգ (12.02.2000): Հին և միջնադար. Հայաստանում Ո. կարգավորվել է ասորա–հռոմ. դատաստանագրքով, անորդի հոգևորականների որդեգրման հարաբերությունները՝ Դվինի ժողովի կանոնով: Աշխարհիկ օրենքով թույլատրվում էր ազգականների երեխաների և «ազատ» ծնվածների որդեգրումը:

ՈՐԴԵՐ (Vermes), առաջնաբերան. որոշ անողնաշար կենդանիների ընդհ. անվանումը: Ընդգրկում է մոտ 46 հզ. տեսակ: Մարմինը երկարավուն է՝ պատված մաշկ. ծածկույթով ու մկաններով (մաշկամկան. պարկ): Վերջավորություններից զուրկ են, շարժվում են հիմնականում մարմնի գալարակծկանքի շնորհիվ: Տարբերում են ստորին և բարձրակարգ Ո.: Առավել տարածված են տափակ Ո., նեմերտինները, կլոր Ո., փշագլուխները և օղակավոր Ո.: Լինում են մակաբույծ և ազատ ապրող Ո.:

ՈՐԴՆԱԼՎԻՃ, *ֆիլոքսերա խաղողի* (Rotreus vitifolia), *լմիճների* ենթակարգի ֆիլոքսերինների ընտանիքի միջատ, խաղողի վազի վտանգավոր վնասատու: Հայրենիքն ԱՄՆ–ն է: Տարածված է նաև Այսրկովկասում: Ո–ի մարմինն օվալաձև է, դեղնականաչավուն, երկ.՝ 0,8–1,2 *մմ*, կնճիթը՝ ծակող–ծծող տիպի: Ունի 2 ձև՝ արմատային և տերևային: Լրիվ ցիկլով զարգանում է խաղողի վազի վերերկրյա և ստորգետնյա օրգանների վրա: Մնվում է տերևների (առաջացնում են գալեր) և արմատների հյութերով:



ՈՐԴՆՅԱԿԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ, մեխանիզմ, որը նախատեսված է իրար խաչվող լիսեռների միջև պտույտը պտուտակի (որդնյակ) և նրան կցորդվող որդնակավոր անվի միջոցով փոխանցելու համար: Օգտագործվում է ուժ. փոխանցումներում:

ՈՐԴՈՒՆԵՐՆԵՐ, նախարար. տոհմ: Ըստ Մովսես Խորենացու՝ սերել են Հայկ Նահապետի Մանավազ որդուց, տոհմ. կալվածը եղել է Այրարատ նահգ–ի *Բասենի* գավ–ը, իշխանանիստը՝ Բասենի Որդորու (Որդու) ավանը: *Խոտրով* Բ Կոտակի օրոք արյունահեղ կռիվներ են սկսվել Ո–ի, Մանավազյանների և Բզնունիների միջև: Թագավորի հրամանով սպարապետ *Վաչե Մամիկոնյանը* ոչնչացրել է նրանց (կոտորվել են արու զավակները), և այդ տոհմերը վերացել են: Ո–ի տիրույթները դարձել են Բասենի եպս–ի սեփականությունը:

ՈՐԹ, **վազ**, որոշ բույսերի (օր.՝ խաղողի, ուռենու) երկարացած ցողունը (ընձյուղը) կամ ճյուղը: Ո. են անվանում նաև խաղողի բույսն ամբողջությամբ, որը ճիշտ չէ:

ՈՐՄԶԴԵՂՆ (Alces alces), **ճյուղաեղջյուր, իշայծյամ**, երկկճղակավոր կաթնասուն, եղջերուների ընտանիքի առավել խոշոր տեսակը: Երկ.՝ մինչև 3, մադավի բարձր.՝ մինչև 2,3 *մ*, կ. զ.՝ մինչև 570 *կգ*, երբեմն՝ ավելի: Արուներն ունեն թիակաձև մեծ եղջյուրներ: Արժեքավոր արդյունագործ. կենդանի է (միսը, կաշին, եղջյուրները): Կատարում են ընտելացման փորձեր:

ՈՐՄԶՊԵՐՈՒԺ, *Որմիզդ Պերոժ*, գվո *Փայտրակարան* նահգ–ում: Համապատասխանել է ներկայի Լենքորանի և Աստարայի (Ադրբեջան) շրջանների տարածքին:

ՈՐՄՆԱԲՈՒՅՏ (Parietaria), **ապակեխոտ**, եղինջազգիների ընտանիքի միամյա և բազմամյա կոճղարմատավոր կամ հիմքում փայտացողուն խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 12 տեսակ, ՀՀ–ում՝ 5 (հուդայական, ուղիղ, թաքնված, սերբ. և մանրածաղիկ)՝ ՀՀ բոլոր մարզերում: Պտուղը ձվաձև է: Նպաստում է հողառաջացմանը:

ՈՐՄՆԱԽՈՐՇ, խորշ պատի մեջ (ներքին կամ արտաքին)՝ քառանկյուն, բազմանիստ կամ կիսաշրջանաձև հատակագծով՝ կամարակապ կամ գմբեթարդ վերջավորությամբ: Արտաքին Ո–երը գործածվել են պատերի հոծ զանգվածը թեթևացնելու, շենքի ճակատները գեղազարդելու համար, ներքին Ո–երը՝ որպես մկրտատուն, սպասքապահարան (եկեղեցիներում), գրապահարան (գրատներում), նաև տնտ. կարիքների համար (բնակելի տներում): Հայ ճարտ–յան մեջ եռանկյուն հատակագծով Ո–երը («հայկական խորշեր») հանդիպում են վաղ միջնադարում, լայնորեն տարածվել են IX–XIV դդ–ում:

ՈՐՄՆԱՆԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ, գեղանկարչության տեսակ, մոնումենտալ արվ–ի ճյուղ. սվաղված պատերին, առաստաղների մակերեսներին փակցված պաստառի, թղթի և այլ նյութերի վրա պատկերներ, զարդապատկերներ ստեղծելու արվ.: Հայաստանում Ո–յան մեզ հայտնի ամենահին նմուշներն ուրարտ. դարաշրջանից են: Ո. հայ իրականության մեջ առավել զարգացել է միջնադարում (VII դ–ում՝ Արուճի, Թալինի կաթողիկե, XIII դ–ում՝ Քորայրի, Ախթալայի Սբ Աստվածածին եկեղեցիները ևն): Վերջերս վերարացվել են նաև Թբիլիսիի Սբ Գևորգ եկեղեցու որմնանկարները (Հովսաթանյաններ):

ՈՐՄՆԱՍՅՈՒՆ, **որմնամույթ**, ուղղանկյուն հատվածքով ուղղաձիգ ելուստ պատի բարձր–յամբ: Լայնորեն կիրառվել է օրդեր. ճարտ–յան մեջ՝ հիմնականում որպես հարդարանքի տարր (երբեմն ունեցել է կառուցվածք. նշանակություն՝ ուժեղացրել է պատը):

«ՈՐՈԳԱՅԹ ՓԱՌԱՅ», սահմանադրության 1–ին նախագիծը հայ իրականության մեջ և առաջիններից մեկն աշխարհում: Շարադրել է Շահամիր *Շահամիրյանը*, տպագրվել է 1788–89–ին Մադրասում:

ՈՐՈԳԻՆԵՍ, **Օրիգենես** (մոտ 185–253/254), աստվածաբան, վաղ *հայրաբանության* ներկայացուցիչ, ավետարան. բանասիրության հիմնադիրը: Ապրել է Ալեքսանդրիայում, որտեղ 18 տարի գլխավորել է քրիստ. կատեխիզիստ. դպրոցը: 231–ին տեղափոխվել է Պաղեստին և ձեռնադրվել երեց: Դեցիուս կայսեր օրոք՝ քրիստոնյաների հալածանքների ժամանակ, ձերբակալվել է և ենթարկվել կտտանքների, նահատակվել:

Ո–ի մշակած հասկացությունների համակարգը լայնորեն կիրառվել է քրիստ. դոգմաների ձևավորման ընթացքում, ճգնավոր. ինքնագիտակցության և կրքերի դեմ պայքարի մասին նրա գիտակարգը մեծ ազդեցություն է ունեցել IV–VI դդ–ի վանական. ճգնավորության վրա: Միավորելով *պլատոնականությունը* քրիստ. դոգմաներին՝ Ո. շեղվել է ուղղափառ քրիստ. դավանաբանությունից, որը հետագայում՝ 5–րդ տիեզերաժողովում (553), համարվել է հերետիկոսություն:

ՈՐՈԴԵՍ II, **Օրոդ** (ծ. թ. անհտ–մ. թ. ա. 37/36), Պարթևաց արքա՝ մ. թ. ա. 57–38/37–ին՝ Պարթև Արշակունիների հարստությունից: Մ. թ. ա. 57–ին եղբոր՝ Միհրդատի հետ սպանել է հորը՝ Հրահատ III–ին, և գահ բարձրացել: Սակայն Միհրդատը գահընկեց է արել նրան և կարճ ժամանակով գրավել գահը (Միհրդատ III): Սկսված գահակալ. պայքարում հաղթել է (մ. թ. ա. 55/54) Ո. II–ը: Մ. թ. ա. 50–ից նրան գահակից է եղել որդին՝ Բակուրը, որի սպանվելուց (38/37) հետո Ո. II հրաժարվել է գահից՝ հօգուտ մյուս որդու՝ Հրահատ IV–ի:

ՈՐՈՁՈՂՆԵՐ (Ruminantia), *երկմասկավորների* կարգի կաթնասունների ենթակարգ: Ո–ի մեծամասնության ստամոքսը բարդ է. կազմված է 4 բաժնից՝ գանձակ, ցանց, հազարաթերթիկ և շրդան: Առաջին 2 բաժիններից կերը պարբերաբար ործկում են և ծամում (որոճում) 2–րդ անգամ: Որոշ Ո–ի (եղջերվիկներ) ստամոքսը 3–րդ բաժին չունի: Մեծամասնության եղջյուրները լավ են զարգացած: Հայտնի է Ո–ի 180 տեսակ՝ ընդգրկված 5 ընտանիքներում՝ եղջերվիկներ, մշկայծամներ, ուղտեր, սնամեջ եղջերավորներ,

ընձուղտներ: Գղտ. կենդանիներից Ո. են խեկ-ները, ոչխարները, այծերը: Վայրի Ո. որսարդյունագործ. կենդանիներ են:

ՈՐՈՄ (Colium), *դաշտավյուկազգիների* ընտանիքի միամյա կամ բազմամյա խոտաբույսերի ցեղ: Չարորակ մոլախոտ է, աղբոտում է հացահատիկ. ցանքերը: Հայտնի է մոտ 40 (այլ տվյալներով՝ 15–20) տեսակ, ՀՀ-ում՝ 5 (պարսկ., կարծր, հարբեցնող, արոտ., անգլ., բազմահար կամ իտալ.): Վերջին երկուսը մշակովի են: Տարածված է Արագածոտնի, Կոտայքի, Լոռու, Տավուշի, Սյունիքի և այլ մարզերի անտառ., լեռն. գոտիներում: Պտուղը հատիկ է: Հարբեցնող Ո. թունավոր է (հատիկի կեղևի տակ համակեցությամբ ապրում է ստրոմատինիա թեմուլենտա սունկը, որն արտադրում է թեմուլին ալկալոիդը), նրա խառնուրդ պարունակող ալյուրից ստացվում է «գիժ հաց», որն առաջացնում է գլխապտույտ, գլխացավ, գիտակցության կորուստ, ջղաձգություններ:

ՈՐՈՇԻՉ, դետերմինանտ, 1. (մաթ.) որոշակի կանոնով n^2 թվերից մաթ. արտահայտության կազմում, որն օգտագործվում է 1-ին կարգի հանրահաշվ. հավասարումների համակարգի լուծման և հետազոտման ժամանակ: n թիվը կոչվում է Ո-ի կարգ: Օր.՝ a_1, b_1, a_2, b_2 և թվերից կազմված 2-րդ կարգի Ո. նշանակվում է՝ $\begin{vmatrix} a_1 & b_1 \\ a_2 & b_2 \end{vmatrix}$, որը հավասար է $a_1b_2 - b_1a_2$:

2. (Լեզվաբ.) նախադասության երկրորդ. անդամ, որը ցույց է տալիս առարկայի որակը, քանակը, թվային կարգը, ծավալը, սերումը ևն: Արդի հայ-ում որպես Ո. գործածվում են ածականը, թվականը, դերանունը, հարակատար, ենթակայական, անորոշ դերբայները, գոյականը, մակբայը:

ՈՐՈՇՅԱԼ ԻՆՏԵԳՐԱԼ, տես *Ինտեգրալային հաշիվ*:

ՈՐՈՎԱՅՆԱԴԻՏՈՒՄ, *լապարոսկոպիա* (< հուն. lapara – աճուկ, որովայն և ...*ակոպիա*), որովայնի խոռոչի և նրա օրգանների զննումը ընդերադիտակի օգնությամբ, որը ներս է տարվում որովայնի պատը ծակելով:

ՈՐՈՎԱՅՆԱՄՉԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ, *պերիտոնիտ* (հուն.՝ peritonaion – *որովայնամիզ*), առաջանում է որպես բարդություն՝ առավելապես *որդանման ելունի* և որովայնի խոռոչի այլ օրգանների սուր հիվանդությունների և վնասվածքների ժամանակ: Տարբերում են ընդհ. (տարածուն) և սահմանափակ (տեղային) Ո. բ.:

ՈՐՈՎԱՅՆԱՄԻՋ, *պերիտոնեում*, որովայնի պատերը և նրա խոռոչի օրգաններն արտաքինից պատող շճաթաղանթ: Շատ բարակ է, թափանցիկ, փայլուն, բաց վարդագույն: Ո. օրգանների համար կատարում է պատնեշային, պաշտպանող. գործառույթներ: Հիվանդություններից առավել վտանգավոր է *որովայնամզի բորբոքումը:*

ՈՐՈՎԱՅՆԱՅԻՆ ՏԻՖ (Typhus abdominalis), մարդու աղիք. սուր վարակիչ հիվանդություն. հարուցիչները սալմոնել սեռի բակտերիաներն են: Ախտանշանները՝ տենդ, ընդհ. ծանր վիճակ, ցան, աղիների ախտահարում: Վարակվում են հիվանդներից և բակտերիակիրներից՝ ջրի, սննդի, ճանճերի և կեղտոտ ձեռքերի միջոցով:

ՈՐՈՏԱՆ, **Բարգուշատ**, գետ ՀՀ Սյունիքի մարզում, Արաքսի ձախ վտակը: Կազմավորվում է 2 գետակներից, որոնք սկիզբ են առնում Սյունիքի բարձրավանդակի արմ. 2 փոքր լճերից՝ 3062 *մ* բարձր-յան վրա: Երկ.՝ 179 (ՀՀ-ում՝ 119) *կմ*, ավազանը՝ 2525 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 21,8 *մ*^{3}/*վ*, առլգն՝ 350 *մ*^{3}/*վ* (1968), հոսքը՝ 677,3 մլն *մ*^{3}: Աջ վտակներից են Մաղանը, Արագլիջուրը, Սիսիանը, Լորաշենը, Տաթևը, Քաշունին, ձախափնյա ավազանը համընկնում է Սյունիքի բարձրավանդակին, վտակներից են Ծղուկը, Սառնակուտը, Շաքին, Նորավանը, Վարարակը: Մնումը հիմնականում ստորերկրյա (54 %) և հալոցքային (36 %) է, վարարումը՝ ապրիլ–հունիսին, որի ընթացքում ձևավորվում է տարեկան հոսքի 60 %-ը: Ջրերն օգտագործվում են էներգետիկ և ոռոգման նպատակներով: Կառուցված է Որոտանի կասկադը՝ համապատասխան ջրատեխ. կառույցներով (ջրամբարներ, թունելներ, ջրանցքներ ևն):

«ՈՐՈՏԱՆ», հաս–քաղ., գր., մշակութ. ամսաթերթ (1933–ից, Սիսիան, 1933–65-ին՝ տարբեր անուններով): Մինչև 1995-ը՝ ՀԿԿ Սիսիանի շրջկոմի և ժողպատգմ-ների, ապա՝ Սիսիանի քաղխորհրդի գործկոմի եռօրյա պաշտոնաթերթը:

ՈՐՈՏԱՆ–ԱՐՓԱ–ՍԵՎԱՆ, ջրատեխ. կառույցների համալիր, նախատեսված է Որոտանի, Արփայի և Եղեգիսի հոսքերի մի մասը (տարեկան գումարային ծավալը՝ 415 *մ*^{3}/*վ*) Սևանա լիճ տեղափոխելու՝ վերջինիս մակարդակը վերջին տարիներին հաստատված մակարդակի (1900,5 *մ*) մոտ պահելու համար: Բաղկացած է Արփա–Սևան (1981) և Որոտան–Արփա (2004) թունելային ջրատար համակարգերից:

ՈՐՈՏԱՆԻ ԼԵՌՆԱՆՁՔ, Զանգեզուրի լ–շղթայի հս. մասում՝ Ամուլսար լ–գագաթի մոտ՝ 2344 *մ* բարձր-յան վրա՝ ՀՀ Սյունիքի մարզում: Ո. լ–ով անցնում է Եղեգնաձոր–Սիսիան խճուղին:

ՈՐՈՏԱՆԻ ՋՐԱՆՁՔ, ՀՀ Սյունիքի մարզում: Սկիզբ է առնում Տաթևի ջրէկի ճնշման ավազանից, սնվում է Տաթևի ջրէկի գլխամասային՝ Շամբի ջրամբարից: Շահագործման է հանձնվել 1974-ին: Մայր ջրանցքի երկ. 27,7 *կմ* է, որից 3,3 *կմ* անցնում է թունելով, 8,5 *կմ*՝ երկշար մետաղ. խողովակաշարով, ջրթողունակությունը՝ 4,3 *մ*^{3}/*վ*: Ջրանցքի վրա կան 110 ջրատեխ. կառույցներ: Ոռոգում է մարզի 640 *հա* հողատարածք:

ՈՐՈՏԱՆԻ ՋՐԷԿՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ, ՀՀ Սյունիքի մարզում: Ներառում է Տաթևի (գործարկվել է 1970-ին), Շամբի (1978), Սպանդարյանի (1989) ջրէկները: Գումար. հզորությունը 404,2 *Մվտ* է, էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրանքը՝ 1,16 մլրդ *կՎտ·ժ*:

ՈՐՈՏՆԱՔԵՐԴ, **Որոտան**, բերդ Սյունիքի նախ–ի Ծղուկ գվո-ում (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզի Որոտան գ–ի մոտ)՝ համանուն գետի աջափնյա լ–բազուկի վրա: Ս. Օրբելյանը (XIII դ.) Ո. դասել է Սյունիքի նշանավոր բերդերի շարքը, որը 1075–94-ին պատկանել է Սյունյաց թագավոր Սենեքերիմ Ա-ին: Այժմ ավերակ է:

ՈՐՈՏՆԱՎԱՆՔ, **Վաղատնի վանք**, XI դ–ի ճարտ. համալիր ՀՀ Սյունիքի մարզի Վաղատին գ–ից 2 *կմ* հվ–արլ.՝ Որոտան գետի կիրճի եզրին: Ո-ի հնագույն՝ Սբ Գրիգոր միանավ եկեղեցին (այժմ՝ ավերակ), ըստ ավանդության, հիմնադրել է *Գրիգոր Ա Լուսավորիչը*: Սյունյաց Շահանդուխտ թագուհին կառուցել է Սբ Ստեփանոս Նախավկա (1000), որդին՝ իշխան Սևադան՝ Սբ Կարապետ (1006) եկեղեցիները: XI դ–ում վերջինիս կից կանգնեցվել է հուշասյուն: Գործել է մինչև XX դ–ի սկիզբը, 1931-ին ավերվել է երկրաշարժից:

ՈՐՈՐՆԵՐ (laridae), *քարադրանմանների* կարգի թռչունների ընտանիք: Թևերը երկար են՝ երկարատև թռիչքների հարմարված, որոշ Ո. ունակ են սավառնաթռիչքի: Լավ լողում են: Մարմնի երկ.՝ 20–80 *սմ*: Հայտնի է ավելի քան 40 տեսակ, ՀՀ-ում՝ 9: Հայկ. և սովոր. Ո. բնադրում են գաղութներով՝ Սևանա և Արփա լճերի կղզիներում:

ՈՐՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գիտ-յուն որսորդ. տնտ-յան կազմակերպչատնտ., կենսբ. մեթոդների ու հիմունքների, որսի ֆաունայի պահպանության, արդյունավետ օգտագործման և հարստացման մասին: Զևավորվել է XX դ–ի սկզբներին:

ՈՐՍԱԳՈՂՈՒԹՅՈՒՆ, վայրի կենդանիների որսը կամ ոչնչացումը որսորդության, ձկնորսության կանոնների և կենդ. աշխարհի պահպանման մասին օրենսդրության այլ պահանջների խախտմամբ: ՀՀ օրենսդրությամբ Ո. է համարվում որսորդությունը կամ ձկնորսությունը՝ առանց համապատասխան մարմնի թույլտվության, որսը արգելված վայրերում, արգելված ժամանակ կամ արգելված միջոցներով ևն:

ՈՐՍԱՏԵԳ, **հարպուն** (անգլ.՝ harpoon), որսորդ. նետող զենք, հիմնականում՝ ծով. գազանորս. արդ-յան մեջ: Ունի հանովի ծայրապանակ, որը կենդանու մարմնի մեջ խրվելիս անջատվում է կոթից: XVII դ–ում օգտագործել են մետաղե Ո-եր: XIX դ–ից կետորսության մեջ կիրառում են Ո-թնդանոթը:

ՈՐՍԻՐԱՆՔ, գվո Կորճայք նահնգ–ում՝ Մեծ Զավ գետի Որսիրանից (այժմ՝ Գավառ կամ Նեհիլ) վտակի հովտում: Մեծ Հայքի 387-ի բաժանումից հետո Կորճայքի հետ անցել է Պարսկաստանին: VII–IX դդ–ում մտել է արաբ. Զազիրա կուսակալության, IX–XI դ–ի կեսին՝ Արծրունիների տիրույթների մեջ: Օսմ. տիրապետության հաստատումից հետո (XVI դ.) մտել է Վանի նահնգ–ի մեջ: Ո-ի շուրջ 4 հզ. հայեր կոտորվել են 1915-ին:

ՈՐՍԿԱՆ ՇՆԵՐ (Canes venatici), որսորդ. շների ցեղախումբ: Զևավորվել են բնական, հետագայում՝ արհեստ. ընտրությամբ: Հայտնի է մոտ 100 ցեղ, ՀՀ–ում՝ 15: Առավել տարածվածներն են լայկաները, կարելա–ֆինն. և սրադունչ քերծենները, որջի շները, հավորսկանները, սպանիելները, կոպտամազ և հարթամազ ֆոքստերիերները, տաքսաները ևն:

ՈՐՍԿԱՆ ՇՆԵՐ, համաստեղություն երկնքի Հս. կիսագնդում՝ Մեծ Արջ, Եզնարած, Վերոնիկայի վարսեր համաստեղությունների միջև: Այդտեղ է նաև Ո. Շ.-նույնանուն պարուրաձև միգամածությունը: Հս. միջին լայն-յուններից երևում է ամբողջ տարին:

ՈՐՔԻՆ, **մրմնջուկ**, ժամանակակից գործն. բժշկության մեջ «Ո.» եզրույթն օգտագործվում է որպես մաշկ. որոշ հիվանդությունների 2-րդ անվանում (օր.՝ էկզեմա կամ թաց Ո., պսորիազ կամ թեփատու Ո., տրիխոֆիտիա կամ խուզող Ո.) և պահպանվել է որոշ եզրույթներում (օր.՝ կարմիր տափակ Ո.):

ՈՔԱՂԵ, **Ոքաղ**, համանուն բք–ով գվո Տայք նահնգ–ում: Հավանաբար ընդգրկել է Ազորդ (այժմ՝ *Թորթում*) գետի վերին և միջին հոսանքի շրջանները: Հետագայում համապատասխանեցվել է Թորթում գվո–ին:

Չ

Չ, հայ. այբուբենի 25-րդ տառը, անվանումը՝ չա: Ունի ***գրչագիր***, ***երկաթագիր***, ***բոլորգիր***, ***նոտրգիր*** տառատեսակները: Հայ-ի առաջնալեզվային հպաշփական շնչեղ խուլ բաղաձայն հնչյուն (հնչույթ) է: Թվային արժեքը՝ 700:

ՉԱԱԴԱԵՎ Պյոտր Յակովլևիչ (1794–1856), ռուս մտածող, հրապարակախոս: Գրել է («Փիլիսոփայական նամակներ», 1829–31) համաշխ. պատմությունից Ռուսաստանի մեկուսացվածության, հոգևոր լճացման, ազգ. ինքնագոհության մասին, որը խանգարում է նրա ինքնագիտակցությանն ու պատմ. առաքելության իրականացմանը: Առաջին նամակի (1836) հրապարակման պատճառով «Տելեսկոպ» (ռուս.) ամսագիրը փակվել է, իսկ Չ. հայտարարվել է խելագար և զրկվել հրատարակվելու իրավունքից: «Խելագարի ջատագովություն» (1837) երկում արտահայտել է Ռուսաստանի պատմ. ապագայի նկատմամբ իր հավատը:

ՉԱԳՈՎԵՅ Վասիլի Յուրևիչ (1873–1941), ուկրաինացի ֆիզիոլոգ: Ուկր. ԽՍՀ ԳԱ ակադ. (1939): Առաջարկել է (1896) կենսաէլ. երևույթների իոն. տեսությունը: Փորձարար. եղանակով հիմնավորել է էլ. հոսանքի՝ կենդանի հյուսվածքների գրգռող ազդեցության վերաբերյալ տեսություն:

ՉԱԴ (Tchad, Chad), անհոսք և թույլ աղի լիճ Աֆրիկայում՝ Նիգերի, Նիգերիայի, Չադի և Կամերունի տարածքում: Մակերեսը՝ 10–26 հզ. *կմ*^{2}, խոր.՝ 4–11 *մ*: Լիճ են թափվում Շարի և Կոմադուգու-Իորե գետերը:

ՉԱԴ (République du Tchad), **Չադի Հանրապետություն**, պետություն Կենտր. Աֆրիկայում: Սահմանակից է Լիբիային, Կենտրոնաաֆրիկ. Հանրապետությանը, Նիգերին, Նիգերիային, Կամերունին: Տարածքը՝ 1,28 մլն *կմ*^{2}, բն.՝ 11,8 մլն (2016): Մայրաքաղաքը՝ ***Նջամենա***: Պետ. լեզուները՝ ֆրանս., արաբ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ ԱԺ-ն: Բաժանված է 22 վարչ. մարզերի: Հավատացյալների մեծ մասը սուննի մահմեդական է, կան քրիստոնյաներ և ավանդ. հավատալիքների հետևորդներ: Անդամակցում է ՄԱԿ-ին, Աֆրիկ. միությանը, ԱռտՀԿ-ին ևն: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 1,4 հզ. ԱՄՆ դոլար է (2013): Արտահանում է նավթ, խեկ-ներ, բամբակ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, արդ. ապրանքներ, քիմիկատներ, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ ԿՖԱ ֆրանկ:

Չ-ի տարածքում հնում գոյություն են ունեցել Կանեմ, Բոռնու, Վադայի և այլ պետություններ: XIX դ-ի վերջից Ֆրանսիան սկսել է զավթել Չ-ի տարածքը: 1904-ին Չ. մտցվել է ֆրանս. Ուբանգի-Շարի–Չադ գաղութի մեջ, որը 1910-ին ընդգրկվել է Ֆրանս. Հասարակած. Աֆրիկա (ՖՀԱ) գաղութ. դաշնության մեջ: 1914-ից Չ. ինքնուրույն գաղութ էր ՖՀԱ-ի կազմում, իսկ 1946-ից՝ Ֆրանսիայի «անդրծովյան տարածք»՝ նույնի կազմում: 1947-ին ստեղծվել է Չ-ի առաջադիմ. կուս-յունը, որը գլխավորել է Չ-ի անկախության համար պայքարը: 1958-ին Չ. հռչակվել է հանրապետություն Ֆրանս. համագործակցության կազմում, 1960-ի օգոստ-ից՝ անկախ պետություն: 1962-ին նախագահ Ֆ. Տոմբալբայը հաստատել է անձնիշխան. վարչակարգ և ճնշել այլախոհությունը: 1975-ին տեղի է ունեցել ռազմ. հեղաշրջում, Տոմբալբայը սպանվել է, և իշխանությունն անցել է Բարձրագույն ռազմ. խորհրդին (ԲՌԽ), արգելվել է սահմանադրության և քաղ. կուս-յունների գործունեությունը մինչև 1978-ը: 1979-ին Չ-ի ազգ. ազատագրության ճակատ (ստեղծվել է 1966-ին) կազմյան ջոկատները տապալել են ԲՌԽ-ն, և իշխանությունն անցել է ռազմաքաղ. տարբեր խմբավորումների, որոնցից գլխավորները հանդես են եկել հօգուտ Չ-ի անկախության ամրապնդման: Խմբավորումների միջև կնքվել է համաձայնագիր՝ Ազգ. միասնության ժամանակավոր կառ-յուն ստեղծելու և ֆրանս. զորքերի (որոնք 1960-ին մտցվել էին Չ-ի Կառ-յան խնդրանքով) դուրսբերման վերաբերյալ: 1982-ին իշխանությունն անցել է պաշտպ-յան նախարար Հ. Հաբրեին, որին 1990-ին իշխանությունից հեռացրել են Փրկության հայրենասիր. շարժման զորքերը՝ Ի. Դեբիի գլխավորությամբ: Վերջինս նախագահ է ընտրվել 1996-ին: 2008-ին ընդդիմադիր ուժերի պետ. հեղաշրջման փորձը ձախողվել է:

ՉԱԴՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, աֆրո-ասիական լեզուների (շուրջ 150 լեզու) ընտանիք: Տարածված են Հս. Նիգերիայում, Կամերունում, Արմ. Չադում, Հվ. Նիգերում:

ՉԱՋՈՎ Եվգենի Իվանովիչ (ծ. 1929), ռուս թերապևտ: ՌԳԱ (1979) և ՌԲԳԱ (1971) ակադ.: Սոց. աշխ. հերոս (1978): ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1974): Աշխ-ները վերաբերում են սրտամկանի ինֆարկտին և սրտաբանության խնդիրներին: «Ռուսական սրտաբանական գիտաարտադրական համալիրի» գլխ. տնօրեն (1997–2016): ԽՍՀՄ ԱՆ 4-րդ վարչության պետ (1967–1986), առողջապ-յան նախարար (1987–90): 2008-ից՝ ՌԴ ԱՆ գլխ. սրտաբան: «Աշխարհի բժիշկները հանուն միջուկային պատերազմի կանխարգելման» միջազգ. շարժման նախաձեռնող և համանախագահ (Խաղաղության Նոբելյան մրց.՝ 1985):

ԽՍՀՄ (1969, 1976, 1991) և ՌԴ (2003) Պետ., Լենինյան (1982) և բազմաթիվ այլ մրց-ներ:

ՉԱԹԱԼ-ՀՈՒՅՈՒՔ, մ. թ. ա. VII հզ-ամյակի նեոլիթյան բնակավայր Առաջավոր Ասիայում (այժմ՝ Թուրքիայի Կոնիա ք-ից մոտ 54 *կմ* հվ-արլ.): Հայտնաբերվել են որսորդության, գղտ. գործիքներ, զենքեր, զարդեր, կավե կնիքներ ևն:

ՉԱԹԵՐՋԻ Սունիթի Կումար (1890–1977), հնդիկ լեզվաբան, բանասեր-արևելագետ: Արդի հնդ. լեզվաբ-յան հիմնադիրը: 1969-ից՝ Դելիի գրկ-յան ակադ-ի նախագահ: Ուսումնասիրել է հայ-ը, մասնավորապես՝ գրաբարը, հոդվածներ տպագրել հայոց լեզվի, պատմության և մշակույթի վերաբերյալ: Հեղինակ է «Բենգալերենի ծագումն ու զարգացումը» (1926) և այլ աշխ-ների, նաև «Հայկական հերոսական լեգենդները և «Սասունցի Դավիթ» էպոսը» (1961) ուսումնասիրության:

ՉԱԹԻՆ, ***Գուգարաց լեռնաշղթայի*** ամենաարձր լ-գագաթը (2244 *մ*) ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի սահմանին՝ Սևորդյաց լ-շղթայի առանցք. մասում: Կազմված է մեզոզոյի հրաբխածին ապարներից: Լանդշաֆտը լ-մարզագետնային է, լանջերին կան անտառներ:

ՉԱԻԼՅԱՆ Սամվել Գրիգորի (ծ. 1955), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դ-ր (2005): ՀՀ ԳԱԱ կենսաքիմիայի ինստ-ի տնօրեն (2012-ից): Աշխ-ները վերաբերում են մարդու և կենդանիների գլխուղեղի ենթատեսաթմբային շրջանից անջատած նոր պեպտիդների նույնականացմանը և ֆիզքիմ. հատկություններին:

ՉԱԼԱԲԻ ՔՅՈՒԽՎԱ, XVIII դ-ի 1-ին երևանյակի Արցախի ազատագր. պայքարի մասնակից: 1723-ին Պետրոս I-ի պատվիրակ ***Իվան Կարապետին*** Բաքվից ուղեկցել է Ղարաբաղ: 1727-ին մեկնել է Ս. Պետերբուրգ՝ Պետրոս I-ին հասցեագրված Խամսայի մելիքների ռազմ. օգնության խնդրագրով:

ՉԱԼԴԻԱՆՅԱՆ Վիգեն (Վաղարշակ) Հակոբի (ծ. 1956), կինոռեժ., դերասան: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2007): 1998–99-ին՝ ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարար: 1981-ից՝ Հայֆիլմի ռեժ., 1983–85-ին՝ ԵՌԹ ռեժ. (Բ. Բրեխտի «Կուրաժ մայրիկը և նրա զավակները», 1984), 2016-ից՝ Երևանի Համազգ. թատրոնի գեղ. ղեկ., 2017-ից՝ Հայկ. ազգ. կինոակադ-ի նախագահ: Նկարահանել է «Ապրիլ» (1985, տարբեր կփ-երի 5 մրց.), «Ձայն բարբառոյ...» (1991,

գլխ. դերակատար, նկարիչ, սցենարի համահեղ.՝ Չ.), «Տեր ողորմյա» (1997), «Լռության սիմֆոնիա» (2001, տարբեր կվ–երի 12 մրց., հայկ. առաջին ֆիլմն է, որ 2002–ին ներկայացվել է «Օսկար» մրցանակաբաշխության՝ օտարալեզու ֆիլմ անվանակարգում), «Քրմուհի» (2007), «Մաեստրո» (2010), «Ձայն լռության» (2013), «Վարդապետի լռությունը» (2016) և այլ ֆիլմեր: Նկարահանվել է կինոյում:

Միջազգ. 1–ին կվ «Ոսկե արծիվ» (1993, Թբիլիսի), 1–ին հայկ. «Դերյուտներ» կվ գլխ. (1993, Երևան), 27–րդ համաշխ. կվ «Ոսկե Ռիմի» (1994, Հյուսթոն), «Հայակ» (2012), Հայկ. ազգ. կինոակադ–ի «Անահիտ» (2016) մրց–ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» (2001), Մ՚Ն ոսկե (2011) մեդալներ, ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» շքանշան (2017):

ՉԱԼԸԽՅԱՆ Վրթանես (1803–1834), լեզվաբան: Վննմմ անդամ: Հեղինակ է «Քերականութիւն հայկազեան լեզուի» (1827) դասագրքի, «Կրթութիւն գործնական հայկական գրոց բարբառոյ…» (1829) աշխ–յան:

ՉԱԼԹԻԿՅԱՆ Հովհաննես Հակոբի (1902–1972), ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դ–ր (1946), պրոֆ. (1948): ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1961): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): Ռուբեն և Վիգեն *Չալթիկյանների* հայրը: ՀԽՍՀ–ում ֆիզքիմիայի դպրոցի հիմնադիրը: Բացահայտել է կապրոկատալիտիկ ռեակցիաներում կինետիկորեն ակտիվ կոմպլեքսի բաղադրությունը և ռեակցիաների մեխանիզմը: Ուսումնասիրել է ուժեղ էլեկտրոլիտների մետաղ–վակուում բաժանման մակերևույթին պոտենցիալի, ացետիլենի դիմերման, վինիլացետիլենի հիդրոքլորման կատալիտիկ ռեակցիաների մեխանիզմը: Տվել է ամինզերօքսիդ ռեակցիայի միաժամանակ ռադիկալ. և ոչ ռադիկալ. մեխանիզմով ընթանալու վարկածը:

Լենինի շքանշան (1962):

ՉԱԼԹԻԿՅԱՆ Ռուբեն Հովհաննեսի (ծ. 1949), ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դ–ր (1988), պրոֆ. (1989): Հովհաննես *Չալթիկյանի* որդին, Վիգեն *Չալթիկյանի* եղբայրը: Աշխ–ները վերաբերում են ամինգերօքսիդ համակարգերում քեմիլյումինեսցենտման, քիմ. կինետիկայի և պոլիմերման հիմնախնդիրներին:

ՉԱԼԹԻԿՅԱՆ Վիգեն Հովհաննեսի (ծ. 1942), ֆիզիկոս–տեսաբան: Ֆիզմաթ. գիտ դ–ր (1996): Հովհաննես *Չալթիկյանի* որդին, Ռուբեն *Չալթիկյանի* եղբայրը: Աշխ–ները վերաբերում են ոչ գծային օպտիկային, քվանտ. օպտիկային, լազեր. ֆիզիկային:

ՉԱԼԻԿՅԱՆ Գրիգոր Սարգսի (1920–2004), դերասան, ռեժ.: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1977): 1940–59–ին՝ Աշտարակի, ԵՊՀԹ, Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնների դերասան (Ժան Վալժան՝ «Թշվառներ»՝ ըստ Վ. Հյուգոյի, ևն): Հայկ. ռադիոթատրոնի հիմնադիրներից (Հ. Քոչարի «Նահապետը», Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը», նաև հեռուստաթատրոնում): Հեղինակ է բանաստեղծությունների, պիեսների ժող–ների, «Պարույր Սևակի ու մի քիչ էլ իմ մասին» (2004) հուշագրքի:

ՉԱԼԽՈՒՇՅԱՆ Գրիգոր (1861–1931), հաս. գործիչ, պատմաբան, իրավաբան: 1919–ին՝ ՀՀ ներկայացուցիչ Դոնում: 1920–ի նոյեմբ–ին մեկնել է Կ. Պոլիս՝ որպես Հայաստանի Կարմիր խաչի նախագահ, և մնացել այնտեղ: Աշխ–ները վերաբերում են Հայկ. հարցին և Հայոց ցեղասպանությանը, ցար. իշխանությունների հակահայկ. քաղ–յանը:

ՉԱԼՈՅԱՆ Վազգեն Կարապետի (1905–1981), փիլ.: Փիլ. գիտ. դ–ր (1945): ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1965): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1967): Աշխ–ները վերաբերում են հին և միջնադար. շրջանի հայ մտածողների աշխարհայացքների վերլուծությանը, հայ փիլ–յան պատմությանը, մշակույթի ընդհանուր տես. և մշակութաբան. խնդիրներին: Դավիթ Անհաղթի փիլ–յան առաջին ուսումնասիրողներից է («Դավիթ Անհաղթի փիլիսոփայությունը», ռուս., 1946), Եզնիկ Կողբացու և Հովհան Որոտնեցու երկերի բնագրերի հրտ–ը:

ՀԽՍՀ ԳԱ Մեսրոպ Մաշտոցի անվ. մրց. (1977):

ՉԱԼՏԻԿՅԱՆ Գեորգի Յակովի (1908–1971), ճարտ.: 1932–ից՝ Մոսկվայում: Համահեղինակ է (1945–65) Մոսկվայի Դավիդկովո, Կունցևո շրջանների, Գագարինի անվ. հրապարակի, Վեռնադսկու պողոտայի կառուցապատման, բնակելի տների, Ռադիոէլեկտրոնիկայի, Ճենապակու տների, Շինարարների մշակույթի տան, «Զվյոզդնի» կինոթատրոնի նախագծերի: ԽՍՀՄ ՆԽ մրց.:

ՉԱԼՈՒՔՅԱՆ Լևոն Հարությունի (ծ. 1927), ինչյուն. ռեժ.: 1959–ից ամերիկ. կինոյում ինքնատիպ տեխնիկայով ինչյունավորել է մոտ 250 ֆիլմ («Ժակ Կուստոյի ստորջրյա աշխարհը», «Վայրէջք Լուսնի վրա», «Աֆրիկայի վայրի շները», «Դիլիջնջեր», «Պինգվինների թռիչքը», «Դասակ» ևն), 1965–ից սեփ. «Ռայդեր» ֆիրմայում արտադրել է կինոձայնագրման սարքեր, տեսախցիկներ:

«Օսկար» (1987), «Էմմի» (11 անգամ) և այլ մրց–ներ:

ՉԱԼՖԻ (Chalfie) Մարտին (ծ. 1947), ամերիկացի հրեա ֆիզիոլոգ: Հետազոտել է ֆլուորեսցենտող սպիտակուցը (անջատել է Օ. *Միմումուրան*՝ էկվորեա մեդուզայից): Բացահայտել է ֆլուրեսցենցիայի մեխանիզմը, առաջարկել նրա օգտագործման եղանակ գիտ. հետազոտություններում:

Նոբելյան մրց. (2008, Օ. Սիմոմուրայի և Ռ. *Ցյանի* հետ):

ՉԱԽԱԼՅԱՆ Յոլակ Մեսրոպի (1921–1983), ճարտ.: ՀԽՍՀ վաստ. ճարտ.: Համահեղինակ է Երևանի գլխ. հատակագծի (1971), Նորք և Նուբարաշեն շրջանների, Դավիթաշենի Դ, Շահումյանի № 16, Զրվեժի «Մայակ» միկրոշրջանների մանրամասն հատակագծերի, հեղինակ՝ Արարատյան, Քանաքեռ, Նորք, Եռանկյունի բնակելի շրջանների կառուցապատման:

ՉԱԽՄԱԽՄԱԶՅԱՆ Եկատերինա Արտեմի (1916–2008), միջուկ. էլեկտրոնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. թեկնածու (1949): Աշխ–ները վերաբերում են միջուկ. սարքաշինության, միջուկ. զինամթերքի ստեղծման և անվտանգության հարցերին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1953):

ՉԱԽՄՈՒԽԻ ԵԿԵՂԵՑԻ, ճարտ. հուշարձան Տայքի Բերդաց Փոր գվռ–ի Չախմուս գ–ում: Քառախորան, կենտրոնագմբեթ, 4 անկյուններում՝ ավանդատներով, հռիփսիմեատիպ եկեղեցի է, որի ճարտ. առանձնահատկությունները բնորոշ են VII դ–ի հուշարձաններին: Պահպանվել են սրբատաշ քարով շարված պատերը:

ՉԱԽՐՈՒԽՍԱՉ, XII դ–ի վրացի բանաստեղծ: Հեղինակ է «Թամարիանի» ներբողների ժող–ի: Չ–ի ոտանավորը՝ որպես բանաստեղծության ինքնուրույն տեսակ, հեղինակի անվամբ (չախրուխաուլի) տարածվել է վրաց. դաս. պոեզիայում:

ՉԱԿԱ, **Շակա** (մոտ 1787–1828), զուլուսների ինկոսի (տիրակալ): Հվ–աֆրիկ. ազգակից ցեղերի միության ղեկ. (1816–ից հետո): Հիմք է դրել զուլուսների պետականությանը: Կյանքի վերջին տարիներին՝ բռնապետ կառավարիչ: Սպանվել է:

ՉԱԿԻՐՈՎ Էմիլ (1948–1991), բուլղար դիրիժոր: Բուլղարիայի փառատոն. նվագախմբի հիմնադիր–ղեկ. (1986): Եղել է Պլովդիվի, Ֆլանդրիայի Թագավոր. և այլ նշանավոր սիմֆ. նվագախմբերի դիրիժոր: Դիրիժորների Հ. ֆոն Կարայանի անվ. միջազգ. մրցույթի 1–ին մրց. (1970):

ՉԱԿԼԱՅՍ (Čaklais) Մարիս (1940–2003), լատիշ բանաստեղծ, թարգմանիչ: Հեղինակ է «Երկուշաբթի» (1965), «Հետիոտնը և հավիտենությունը» (1967), «Անտառային աղավնու կանչը» (1979), «Գողացված խեցի» (1980) և այլ ժող–ների, «Մարդը, հերկած հողը» (1976), «Կրակն առվակում» (1978), «Դաշտամիջի ծառը» (1987) և այլ գործերի, Հայաստանին նվիրված «Հայաստանը անցորդին», «Խաչքարի ձայնը», «Մագաղաթի թերթիկների ձայնը», «Քամիներից է փրկվել քարը» բանաստեղծությունների, «Վերադարձ դեպի Հայաստան» պոեմի: Թարգմանել է հայ դասականների գործերից: Հայ. հրատարակվել է «Նվագիր ծղրիդ» (1976) բանաստեղծությունների ժող–ը:

ՉԱԿՈ (Chaco), պրովինցիա Արգենտինայի հս–արլ–ում: Տարածքը՝ 99,6 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ Ռեսիստենսիայա:

ՉԱԿՈՎՍԿԻ Ալեքսանդր Բորիսովիչ (1913–1994), ռուս գրող: Սոց. աշխ. հերոս (1973): 1962–88–ին՝ *«Լիտերատուրնայա գազետա»* թերթի գլխ. խմբ.: Հեղինակ է ՀՄՊ–ին նվիրված «Դա եղել է Լենինգրադում» (գիրք 1–3, 1944–47), «Մեզ մոտ արդեն առավոտ է» (1949), «Բլոկադա» (գիրք 1–5, 1968–75, հայ.՝ գիրք 1–3, 1973–77), «Հաղթանակ» (գիրք 1–3, 1978–81, հայ.՝ գիրք 1–2, 1981–82), «Նյուրնբերգյան ուրվականներ» (գիրք 1, 2, 1987, 1989) հակաֆաշիստ. թեմաներով վեպերի, նաև հրապարակախոս. նյութերի: Հայ. հրատարակվել է նաև «Անավարտ դիմանկար» (1988) վեպը: ԽՍՀՄ Պետ. (1950, 1983), Լենինյան (1978) մրց–ներ:

ՉԱԿՍՏԵ (Čakste) Յանիս (Իվան Քրիստափորովիչ, 1859–1927), Լատվիայի Հանրապետության 1–ին նախագահը՝ 1922–27–ին:

ՉԱԿՐԱ (սանսկրիտ – անիվ), 1. մետաղե նետող. զենք արտաքին կտրող սայրով Հին Հնդկաստանում: 2. Մարդու հոգևոր մարմնի էներգիայի կենտրոնները հնդ. հոգեֆիզիոլոգիայում:

ՉԱՂԱԹԱՅԵՐԵՆ, գր. թյուրք–ի պայման. անվանումը: Հաջորդել է գր. լեզվին: Ստեղծվել է XII դ–ում: Պատկանում է թյուրք. լեզվաընտանիքի հվ–արլ. ճյուղին:

ՉԱՄԱՆ, քիմիոնի բոված ու ծեծած սերմերից և սխտորով պատրաստած խյուս, որը բարակ շերտով քսում են մսի նախապատրաստուկի վրա բաստուրմա պատրաստելիս:

ՉԱՄԲԱԼ, գետ Հնդկաստանում, Ջամնա գետի աջ վտակը: Երկ.՝ 830 *կմ*, ավազանը՝ 135 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 600 *մ*^{3}/*վ*: Հոսում է Մալվա սարավանդով և Գանգեսի հարթավայրով: Ռամպուր ք–ի մոտ կան մեծ ջրամբար, ջրէկ:

ՉԱՄԴՈ, **Չանդու**, ք. Չինաստանում՝ Տիբեթի ինքնավար շրջանում՝ Մեկոնգ գետի ափին: Բն.՝ 657 հզ. (2012):

ՉԱՄԻՉ, չորացրած *խաղող*: Չորացնում են 20 %-ից ոչ ցածր շաքարայնությամբ խաղողի տեսակները: Սերմերով խաղողի չորացումից ստանում են Չ., իսկ սերմեր չունեցողներից՝ քիշմիշ: Չ-ին գեղեցիկ գույն տալու համար խաղողի սպիտակ սորտերը ծխահարում են SO_2-ով:

ՉԱՄԻՉՅԱՆ (Չամչյան) Լուիջի Հակոբ (Ջակոմո, 1857–1922), քիմիկոս-օրգանիկ: Լուսաքիմիայի և էմիսիոն (առաքումային) սպեկտրադիտման հիմնադիրներից: Փիլ. գիտ. դ-ր (1880): Փարիզի, Ս. Պետերբուրգի (1912) ԳԱ-ների արտ. թղթ. անդամ: Առաջարկել է արևի էներգիայի օգտագործումն արդ-յան մեջ, ներդրել սինթեզի լուսաքիմ. եղանակները: Հայտնաբերել և հետազոտել է բազմաթիվ լուսաքիմ. ռեակցիաներ (չհագեցած միացութունների իզոմերում, պոլիմերում, սպիրտների հետ կետոնների ու ալդեհիդների կոնդենսմամբ պինակոնների ստացում ևն): *o*-նիտրաբենզալդեհիդի լուսաքիմ. փոխարկումը *o*-նիտրազաբենզոյական թթվի և նման վերախմբավորումները հայտնի են որպես Չ-ի վերախմբավորում (1881): Առաջինն է բացահայտել պիրոլի արոմատիկությունը, երկհալոգենկարբենների ներգործությամբ պիրոլային օղակի մեծացումը, որի հետևանքով առաջանում են եռտեղակալված պիրիդիններ և քինոլիններ (1901, Չ-Դեն-շտեդի ռեակցիա): Զբաղվել է նաև կենսաքիմիայի հարցերով (լուսասինթեզ, արեգակի էներգիայի օգտագործմամբ բուսակենսազանգվածի արտադր-յուն ևն), պատրաստել է արևային մարտկոց: Պադուայի և Լոնդոնի թագավոր., Հռոմի բժշկ., Ջենովայի ակադ-ների ու գիտ. ընկ-ների անդամ:

Սավոյայի «Պատվո» և Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» շքանշաններ: 9 անգամ առաջադրվել է Նոբելյան մրց-ի:

ՉԱՄՈՌՈ ԲԱՐԻՈՍ (Chamorro Barrios) Վիոլետա դը (ծ. 1929), Նիկարագուա-յի նախագահ՝ 1990–97-ին: 1979–80-ին՝ Ազգ. վերածննդի կառ-յան ղեկ. խորհրդի անդամ:

ՉԱՄՉՅԱՆ Միքայել (Կարապետ) Աբրահամի (1738–1823), պատմաբան, լեզվաբան, աստվածաբան: ՎնտՄՄ անդամ (1762-ից), վրդ. (1769-ից), Կ. Պոլսի Մխիթարյանների մեծավոր (1795–1823): Հեղինակ է «Քերականութիւն հայկազեան լեզուի» (1779), «Պատմութիւն Հայոց...» (հ. 1–3, 1784–86, հայոց քնն. պատմություն ստեղծելու առաջին փորձն է հայ պատմագրության մեջ) աշխ-ների, «Մեկնութիւն սաղմոսաց» (հ. 1–10, 1815–23) երկասիրության, «Վահան հաւատոյ, յորում հաստատի ուղղափառութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ...» (1873) ծավալուն դավանաբան., «Պատկեր տօնից սուրբ Աստուածածնին» (1805), «Սեղան խնկոց» (1816) և այլ երկերի:

ՉԱՄՈՒՌՃՅԱՆ Հովհաննես Սերովբեի, **Տեր-Կարապետյան** (1801–1888), բանասեր, թարգմանիչ, խմբ.: 1838–49-ին դասավանդել է Կ. Պոլսի Սկյուտարի ճեմարանում, եղել տնօրեն: 1846–49 և 1850–52-ին՝ *«Հայասւրան»* թերթի, 1855–56-ին՝ «Ջօհալ» հայատառ թուրք. հանդեսի հիմնադիր-խմբ.: 1855-ին Կ. Պոլսում հիմնադրել է տպարան և մինչև 1886-ը տպագրել շուրջ 45 անուն գիրք: Հեղինակ է «Հաղորդութեան վրայ նամակներ...» (1845), «Քրիստոնէական վարդապետութիւն» (1858), «Բանադատ» (1860), «Իրաւախոհ» (հ. 1–3, 1868–70) դավանաբան. աշխ-ների, եկեղեց. ընդհանուր պատմության վերաբերյալ անտիպ երկի (հ. 1–30):

ՉԱՄՔԵՐԹԵՆ (Չամքերթենյան) Աստղիկ Արայի (ծ. 1953), քաղաքագետ, իրավագետ: *Պողոս Նուբարի* ծոռնուհին: 1994–2012-ին՝ Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հայկ. բաժանմունքի փոխտնօրեն: Հեղինակ է «Հայաստան, իմ արմատները» (ֆրանս., 1993, հայ.՝ 2004), «Կյուլպենկյանը և Երուսաղեմը» (ֆրանս., անգլ., պորտուգ., 2006) և այլ գրքերի:

ՉԱՅԼԱԽՅԱՆ Գևորգ Քրիստափորի (1897–1963), խորհրդ. բանակի հրետանու գեն-մայոր (1943): Միքայել *Չայլախյանի* եղբայրը: 1917-ից մասնակցել է ԱՀՊ-ին, 1918-ին՝ *Սարդարապատի ճակատամարտին*, ՀՄՊ-ի 1-ին օրերին՝ Ուկրաինայի պաշտպ-յանը, 1945-ին՝ Ճապոնիայի դեմ պատերազմին: 1941-ից՝ ՀՕՊ-ի բարձրագույն դպրոցի (Մոսկվա) ամբիոնի, 1943-ից՝ Անդրկովկաս. ռազմաճակատի ՀՕՊ-ի, 1946–58-ին՝ Մոսկվայի հրետան. ռադիոտեխ. ակադ-ի ամբիոնի պետ:

ՉԱՅԼԱԽՅԱՆ Լևոն Միքայելի (1928–2009), կենսաֆիզիկոս-ֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ-ր (1968), պրոֆ.: ՌԳԱ թղթ. անդամ (1984): Միքայել *Չայլախյանի* որդին: Եղել է ՌԳԱ տես. և փորձառ. կենսաֆիզիկայի ինստ-ի տնօրեն (1991–2001, ք. Պուշչինո): Աշխ-ները վերաբերում են գրգռվող հյուսվածքների էլեկտրաֆիզիոլոգիային և միջմկան. փոխազդեցությունների ֆիզիոլոգիային: ԵԳԱ անդամ (2002): Ուլմա (Գերմանիա) համալսարանի պատվ. դ-ր:

ՉԱՅԼԱԽՅԱՆ Միքայել Քրիստափորի (1902–1991), բույսերի ֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ-ր (1940), պրոֆ. (1943): ԽՍՀՄ (1968), ՀԽՍՀ (1971) ԳԱ-ների ակադ.: ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1967): Գևորգ *Չայլախյանի* եղբայրը, Լևոն *Չայլախյանի* հայրը: Չ-ի նախաձեռնությամբ ՀԽՍՀ ԳԱ բուսաբ-յան ինստ-ում ստեղծվել է (1942) բույսերի ֆիզիոլոգիայի լաբորատորիա: Անհայտ բույսերի զարգացման ու ծաղկման հորմոն. տեսության հիմնադիրն է: Մշակել է բույսերի աճումն ու ծաղկումը բուս. հորմոններով, նաև արգելակող նյութերով (ինհիբիտորներ) կարգավորելու եղանակներ:

Գերմանիայի բնախույզների «Լեոպոլդինա» ակադ-ի անդամ, Ռոստոկի (Գերմանիա) համալսարանի պատվ. դ-ր (1969): Լենինի (1952, 1972), ԽՍՀՄ Կարմիր աստղի (1945), Աշխ. կարմիր դրոշի (1975), Հոկտ. հեղ-յան (1982) շքանշաններ:

ՉԱՅԼԴ (Childe) Գորդոն Վիր (1892–1957), անգլիացի հնագետ: Բրիտ. ակադ-ի անդամ (1940): 1946–56-ին՝ Լոնդոնի համալսարանի հնագիտ-յան ինստ-ի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են Եվրոպայի և Արևելքի հնագույն պատմությանը:

ՉԱՅԿՈՎՄԿԱՅԱ Ելենա Անատոլևնա (ծ. 1939), ռուս մարզիկ, մարզիչ (գեղասահք): ԽՍՀՄ վ. մ. (1970), պարուսույց: ՌԴ արվ. վաստ. գործիչ (1994): ԽՍՀՄ չեմպիոն (1957): 1993–97-ին՝ Ռուսաստանի հավաքականի գլխ. մարզիչ:

ՉԱՅԿՈՎՍԿԻ Բորիս Ալեքսանդրովիչ (1925–1996), ռուս կոմպոզիտոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1985): Հեղինակ է 4 սիմֆոնիայի, դաշնամուրի կոնցերտի, կամեր-գործիք. անսամբլների (այդ թվում՝ 6 լար. կվարտետներ), վոկալ շարքերի («Պուշկինի քնարերգությունը», 1972, ևն), կինոերաժշտության («Բալզամինովի ամուսնությունը», «Դեռահասը»): ԽՍՀՄ Պետ. մրց. (1969):

ՉԱՅԿՈՎՍԿԻ Մոդեստ Իլյիչ (1850–1916), ռուս դրամատուրգ, լիբրետիստ, երաժշտաքննադատ: Պ. Ի. *Չայկովսկու* եղբայրը: Հեղինակ է պիեսների, եղբոր՝ «Պիկովայա դամա», «Իոլանտա», Է. Ֆ. Նապրավնիկի՝ «Դուբրովսկի» և ուր. օպերաների լիբրետոների, «Պյոտր Իլյիչ Չայկովսկու կյանքը» (հ. 1–3, 1900–02) կենսագր. գրքի:

ՉԱՅԿՈՎՍԿԻ Պյոտր Իլյիչ (1840–1893), ռուս կոմպոզիտոր, երաժշտ. քննադատ, դիրիժոր: Մ. Ի. *Չայկովսկու* եղբայրը: Ֆրանսիայի Գեղեցիկ արվ-ների ակադ-ի թղթ. անդամ (1892), օպերայի՝նոր՝ «Քնարական տեսարաններ» տեսակի հիմնադիրը: Երաժշտության մեջ բացահայտել է մարդու ներաշխարհը (քնարերգությունից մինչև ողբերգություն): Հեղինակ է օպերաների («Եվգենի Օնեգին», 1878, ըստ Ա. Ս. Պուշկինի, «Մազեպա» 1883, «Պիկովայա դամա», 1890, «Իոլանտա», 1891, ևն), բալետների («Կարապի լիճը», 1876, «Քնած գեղեցկուհին», 1889, «Շչելկունչիկ», 1892), սիմֆոնիաների («Մանֆրեդ», 1885, ևն), նախերգանքների («Ռոմեո և Ջուլիետ», 1869, «Ֆրանչեսկա դա Ռիմինի», 1876), կոնցերտների, սյուիտների, կանտատի, կամեր-գործիք. անսամբլների, ռոմանսների, երգերի և այլ գործերի: 1958-ից Մոսկվայում անցկացվում է Չ-ու անվ. միջազգ. մրցույթ:

ՉԱՅՈՆՈՒ ԹԵՓԵՍԻ, վաղ նորքարիդար. (նեոլիթ) հնագույն (մ. թ. ա. VIII հզ–ամսակ) բնակավայր Հայկ. լ-աշխարհում՝ Աղձնիք նահգ-ի Անզեղտուն գվթ-ում [այժմ՝ Թուրքիայի Դիարբեքիրի իլի Էրգանի (Արղանա) ավանի մոտ]: Չ. թ. օվալաձև արհեստ. բլուր-բնակատեղի է: Ունի 5 հաջորդ. հորիզոն. մշակույթի շերտեր: Յուրացնողից արտադրող տնտ-յան անցման ժամանակաշրջանի բնակավայր է:

ՉԱՅՈՒՊԻ (Çujupi, Չակո, ավելի ուշ՝ Ջակո-Չայուպի) Անդոն (1866–1930), ալբան բանաստեղծ: «Հայր Թոմոր» (1902) ժողով ալբան. պոեզիայում հաստատել է ռեալիզմը: Հեղինակ է նաև «Սալոնիկյան ակումբ» (1909) պամֆլետի, Սքանդերբեգի մասին «Հողածին հերոսը» (հրտ.՝ 1937) դրամայի: Հայ. հրատարակվել է «Բանաստեղծություններ» (1957) ժող-ը:

ՉԱՆ ԿԱՅՇԻ (Ցզյան Ցզեշի, 1887–1975), գոմինդան. վարչակարգի ղեկ. Չինաստանում՝ 1927-ից: 1935-ից՝ չին. բանակի գլխ. հրամ., մարշալ: 1927-ին հաստատել է բռնատիր. վարչակարգ: Չին. ժող. հեղ-յունից (1949) հետո փախել է Թայվան, որտեղ դարձել է կառ-յան ղեկ.:

ՉԱՆ ՀԻՆԳ ԴԱՕ (Tran Hu'ng Dao, 1226/28–1300), վիետնամցի զորահրամ.: 1257–58, 1284–85 և 1287–88-ին կազմակերպել է վիետնամցիների ինքնապաշտպ-յունը երկիր ներխուժած մոնղոլներից: Հեղինակ է ռազմարվ-ի վերաբերյալ աշխ-ների:

ՉԱՆԱՔԿԱԼԵ (Canakkale), ք. Թուրքիայում, նվինգստ Դարդանելի նեղուցի ափին, համանուն վիլայեթի վարչ. կենտրոնը: Բն.՝ 111 հզ. (2011): Անցյալում՝ հուն. Գալիպոլի ք., որի մերձակայքում են *Տրոյայի* ավերակները: Չ-ի Սբ Գևորգ հայկ. եկեղեցին այժմ օգտագործվում է որպես համալսարանի մասնաշենք:

ԱՀՊ–ի ժամանակ թուրք. բանակը կարողացել է կասեցնել անգլ. բանակի ափհանումը Չ–ում, որը հարմարվել է լուրջ հաղթանակ: Այդ ճակատամարտի 100–ամյակի տոնակատարությունը Ռ. Թ. Էրդողանը կատարել է 2015–ի ապրիլի 24–ին, Հայոց ցեղասպանության 100–ամյակի օրը՝ միջազգ. կազմակերպությունների ուշադրությունը շեղելու ակնհայտ միտումով:

ՉԱՆԳԱ Եվգենի Յանովիչ (1920–1999), լատիշ բալետմայստեր: Լատվ. (1956), ՀԽՍՀ (1963) արվ. վաստ. գործիչ: 1940–61–ին՝ Ռիգայի ՕԲԹ–ի արտիստ և բալետմայստեր, 1961–67–ին՝ ԵՕԲԹ գլխ. բալետմայստեր: Բեմադրել է Ա. Խաչատրյանի «Սպարտակ» (1961, նաև Ռիգայում, 1960), «Երեք արմավենի» (ըստ Ա. Սպենդիարյանի երաժշտության), Ա. Բաբաջանյանի «Հերոսական բալլադ», Է. Հովհաննիսյանի «Երկնագույն նոկտյուռն» (երեքն էլ՝ 1964), Է. Հովհաննիսյանի «Պրոմեթևս» (1967) բալետները: ԽՍՀՄ (1951), Լատվ. ԽՍՀ (1958) Պետ. մրց–ներ:

ՉԱՆԳԼԻԻ ԵԿԵՂԵՑԻ, ճարտ. հուշարձան Չանգլի գ–ում (Կարսի և Ալաշկերտի սահմանին), կառուցվել է հավանաբար XI դ–ում, կանգուն է: Խաչաձև գմբեթավոր հորինվածք է, նկատելի է Տայքի ճարտ. դպրոցի ազդեցությունը: Գլանաձև թմբուկի՝ լուսամուտներով 8 կիսաշրջանաձև խորշերի միջև կլոր սյուներ են, որոնց վրա 4–ական կիսասյուներ են՝ որմնանկարներով:

ՉԱՆԴԵ, ք. Չինաստանի կենտր. մասում՝ Յուանցզյան գետի ափին՝ Դունտինհու լճի մեջ՝նրա թափվելու վայրում: Բն.՝ շուրջ 600 հզ. (2010): Տրանսպորտ. հանգույց է, գետ. նվինգստ:

ՉԱՆԴԻԳԱՐՀ, ք. և միութ. տարածք (114 հզ. *կմ*^{2}), Հնդկաստանի Փենջաբ ու Հարյանա նահանգների և նույնանուն միութ. տարածքի վարչ. կենտրոնը: Որպես միութ. տարածք՝ ինքնավար է: Բն.՝ ավելի քան 1 մլն (2011): Ունի համալսարան: Կառուցվել է 1951–56–ին՝ որպես վարչ. կենտրոն:

ՉԱՆԴՐԱ Ռոմեշ (1919–2016), Հնդկաստանի բանվ. շարժման գործիչ: 1966–77–ին՝ Խաղաղության հանաշխ. խորհրդի գլխ. քարտուղար, 1977–90–ին՝նախագահ: 1939–ից՝ Հնդկաստանի կոմկուսի ղեկ. կազմում: Միջազգ. Լենինյան մրց. (1968):

ՉԱՆԴՐԱԳՈՒՊՏԱ ՄԱՈՒՐԻԱ (սանսկրիտ՝ Chandragupta), Մաուրիների պետության և հարստության հիմնադիրը Հնդկաստանում (մ. թ. ա. 322–298): Մագադհեում գահը գրավել և ընդարձակել է տիրույթները, նվաճել ողջ Հս. Հնդկաստանը: Մոտ 305–ին պայմանագիր է կնքել Սելևկիոս I Նիկատորի հետ՝ իր իշխանությունը տարածելով նաև ժամանակակից Բելուջիստանի և Աֆղանստանի տարածքի մի մասում:

ՉԱՆԴՐԱՍԵԿՀԱՐ (Chandrasekhar) Սուբռահմանյան (1910–1995), ամերիկացի հնդիկ աստղաֆիզիկոս: Աշխ–ները վերաբերում են աստղերի ներքին կառուցվածքին, մթն–ին, ճառագայթման տեղափոխման տեսությանը, աստղ. համակարգի դինամիկային, ստոխաստիկ շարժընթացների տեսությանը, հիդրոդինամիկ. կայունությանը, սև խոռոչներին: Նոբելյան մրց. (1983, Ու. *Ֆաուլերի* հետ):

ՉԱՆՇԱ, ք. Կենտր. Չինաստանում՝ Յանցզյան գետի ափին, Հունան պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 4,6 մլն (2015): Զարգացած գղտ. շրջանի կենտրոն է: Չինաստանի հնագույն քաղաքներից (մ. թ.ա. V դ.) է:

ՉԱՆՉԺԻ, ք. Հս. Չինաստանի Շանսի պրովինցիայում: Բն.՝ 730 հզ. (2010): Մերձակայքում արդյունահանվում է քարածուխ:

ՉԱՆՉԺՈՒՈՒ, Ուցզին, ք. Արլ. Չինաստանում՝ Ցզյանսու պրովինցիայում: Բն.՝ ավելի քան 1 մլն (2010): Տրանսպորտ. հանգույց է, նվինգստ՝ Մեծ ջրանցքի ափին:

ՉԱՆՉՈՒՆ, ք. Հս–արլ. Չինաստանում, Ցզիլին (Գիրին) պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 2,8 մլն (արվարձաններով՝ ավելի քան 3 մլն, 2010): Տրանսպորտ. հանգույց է, ունի օդանավակայան: Չին. ավտոմոբիլաշինության խոշորագույն կենտրոնն է:

ՉԱՆՉՈՒՐՅԱՆ Սուրեն Վարազդատի (1937–2009), պարող, պարուսույց: ՀՀ վաստ. արտիստ (1973): 1958–ից՝ Հայաստանի պարի պետ. անսամբլի մենակատար, 1993–2005–ին՝ գեղ. ղեկ.: Առանձնացել են «Կինտոներ», «Սարդարապատ» և այլ պարերի՝ Չ–ի կատարումները, «Զարթոնք», «Քոչարի», «Սայաթ–Նովա» և այլ բեմադրություններ (երեքն էլ՝ Գ. և Ս. Կարապետյանների հետ):

ՀՀ «Սիմսես Խորենացի» մեդալ (2001):

ՉԱՉԻԿՅԱՆ Ռուբեն Գրիգորի (1910–1996), տիեզ. տեխնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1966), պրոֆ. (1970): ՌԴ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1985): Աշխ–ները վերաբերում են ավիաշարժիչների ջերմ. շարժընթացների տեսությանը, ավտոմատագիտ–յանը, հաշվող. տեխնիկային, թռչող սարքերի տեղեկատվ. համակարգերին: Մասնակցել է «Բուրան», «Բուրյա» գերձայն. թևավոր հրթիռների ստեղծմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1982):

ՉԱՊԱԵՎ Վասիլի Իվանովիչ (1887–1919), խորհրդ. ռազմ. գործիչ, Կարմիր բանակի հրամ.: Մասնակցել է ԱՀՊ–ին, Ռուսաստանի քաղաքաց. (1917–22) պատերազմին: 1919–ից՝ 25–րդ հրաձգ. դիվիզիայի հրամ.: Աչքի է ընկել Ա. Վ. *Կոլչակի* դեմ կռիվներում: Զոհվել է մարտում:

ՉԱՊԱԼԱ (Chapala), լիճ Մեքսիկայում՝ Մեքսիկ. բարձրավանդակի հվ–ում: Բարձր.՝ շուրջ 1500 մ: Մակերեսը՝ 1038 *կմ*^{2}, խոր.՝ մինչև 33 մ: Ներհոսող գլխ. գետը՝ Լերմա, արտահոսքը՝ Ռիո Գրանդե դե Սանտյագո գետով՝ Խաղաղ օվկ.:

ՉԱՊԵԿ (Čapek) Կարել (1890–1938), չեխ գրող: Չ–ին համաշխ. ճանաչում են բերել սոցիալ–ֆանտաստիկ. «R. U. R.» (1920), «Մակրոպուլոսի միջոցը» (1922) դրամաները, «Բացարձակի գործարանը» (1922), «Կրակատիտ» (1924) վեպերը: Հեղինակ է նաև «Պատերազմ սալամանդրների դեմ» (1936) վեպի, որտեղ ծաղրել է ֆաշիզմի քաղաքակրթությունը, «Սպիտակ հիվանդություն» (1937) դրամայի, «Առաջին փրկարարը» (1937) վիպակի և այլ գործերի: Հայ. հրատարակվել են «Հեքիաթներ և ուրախ զրույցներ» (1959), «Ինչպես է այդ արվում» (1963), «Հորդուբալ» (1976) ժող–ները:

ՉԱՊԼԻԳԻՆ Սերգեյ Ալեքսանդրովիչ (1869–1942), ռուս մեխանիկոս, աերոդինամիկայի հիմնադիրներից: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1929): Սոց. աշխ. հերոս (1941): Աշխ–ները վերաբերում են տես. մեխանիկային, հիդրո–, աերո– և գազադինամիկային: Ն. Ե. *Ժուկովսկու* հետ մասնակցել է Կենտր. ավիացիոն պետ. ինստ–ի ստեղծմանը (1918, 1921–41–ին՝ գիտ. ղեկ.):

ՉԱՊԼԻՆ (Chaplin) Չառլզ Սպենսեր (1889–1977), ամերիկ. կինոյի անգլիացի դերասան, կինոռեժ., սցենարիստ: Ջ. *Չապլինի* հայրը: 1913–ից նկարահանվել է ամերիկ. կարճամետրաժ կինոկատակերգություններում, ստեղծել «փոքր մարդու» տրագիկոմիկ. կերպարներ: 1915–ից՝ իր ֆիլմերի հեղինակ, ռեժ. ու գլխ. դերակատար («Ներգաղթյալը», 1917, «Շան կյանք», 1918, «Պստիկը», 1921, ևն): «Ոսկու տենդը» (1925), «Կրկես» (1928), «Մեծ քաղաքի լույսերը» (1931), «Նոր ժամանակներ» (1936) ֆիլմերում կոմիկ. հերոսներին բնորոշ են նաև տրագիկոմիկ. հատկանիշները, էքսցենտրիկի և քնարականության համադրումը, «Մեծ դիկտատորը» (1940), «Մսյո Վերդու» (1947) ֆիլմերում՝ երգիծ. ուղղվածությունը: 1952–ից՝ Շվեյցարիայում («Բեմեզրի լույսերը», 1952, «Արքան Նյու Յորքում», 1957, «Կոմսուհին Հոնկոնգից», 1967): Խաղաղության միջազգ. մրց. (1954):

ՉԱՊԼԻՆ Ջերալդինա (ծ. 1944), ամերիկացի կինոդերասանուհի: Չ. Ս. *Չապլինի* դուստրը: Կինոյում նկարահանվում է 1952–ից («Բեմեզրի լույսերը», «Կոմսուհին Հոնկոնգից», «Նորա», «Հայելին ճաքեց», «Աննան և գայլերը», «Կերակրիր ագռավին», «Նեշվիլ», «Հարսանիք», «Խոսիր նրա հետ» ևն):

ՉԱՊԼԻՆ Սիդ (1916–1986), անգլիացի գրող: Հեղինակ է «Սարդինաձկան օրը» (1961, հայ.՝ 1966), «Լրտեսներն ու վերահսկվողները» (1962) վեպերի, որտեղ արծարծել է անգլիացի ժամանակակից երիտասարդների խնդիրները, «Սեմն առավոտները» (1965), «Կարմրագույն խնձորներով ծառը» (1972) վեպերի, նաև վիպակների ու պատմվածքների:

ՉԱՊՄԵՆ (Chapman) Ջորջ (1559–1634), անգլիացի բանաստեղծ, դրամատուրգ: Հեղինակ է «Զավեշտական օրվա բերկրանքը» (1599), «Հիմարացած են բոլորը» (1605), «Հեյ, դեպի արևելք» (Ջ. Մարստոնի և Բ. Ջոնսոնի հետ, 1605) և այլ կատակերգությունների, «Բյուսի դ'Ամբուա» (1607), «Բյուսի դ'Ամբուայի վրեժը» (1613), «Կեսարն ու Պոմպեոսը» (հրտ.՝ 1613) պատմ. ողբերգությունների:

ՉԱՌԼՍՏՈՆ (Charleston), ք. ԱՄՆ–ի Հվ. Կարոլինա նահանգում, նվինգստ Ատլանտ. օվկ–ի և Առափնյա ջրանցքի ափերին: Բն.՝ 115 հզ. (արվարձաններով՝ շուրջ 600 հզ., 2010): Համադաշն. ուժերի՝ Չ–ին մոտակա Ֆորտ Սամտեր ամրությունների գրավմամբ սկսվել է ԱՄՆ–ի քաղաքաց. պատերազմը՝ 1861–65–ին:

ՉԱՌԼՍՏՈՆ (անգլ.՝ charleston), ամերիկ. կենցաղ. և պարահանդես. պար: Տարածվել է 1920–ական թթ–ից: Երաժշտ. չափը՝ 4/4, ռիթմը՝ սինկոպային: Ազգակից է *ռեգթայմին*:

ՉԱՍՏՈՒՇԿԱ, ռուս. ժող. բանահյուս–երաժշտ. երկ՝ սիր., կենցաղ., սոցիալ–քաղ. և այլ թեմաներով՝ առավել տարածված XIX դ–ի 2–րդ կես–XX դ–ում: Կատարվում է աշխույժ եղանակներով՝ հարմոնի կամ բալալայկայի նվագակցությամբ: Օգտագործում են նաև գործիք. և խմբերգ. երաժշտության մեջ:

ՉԱՎԵՍ (Chávez) Կառլոս (1899–1978), մեքսիկացի կոմպոզիտոր, դիրիժոր: Մեքսիկայի ժամանակակից կոմպոզիտոր. դպրոցի հիմնադիրներից: Մեխիկոյի սիմֆ. նվագախմբի հիմնադիրը (1928) և գեղ. ղեկ. (մինչև 1949–ը): Եղել է Գեղե–

ցիկ արվ–ների և գրկ–յան ազգ. ինստ–ի տնօրեն (1947–52–ին)։ Հեղինակ է բալետների, սիմֆոնիաների (այդ թվում՝ «Հնդկացիական», 1936), նվագախմբային և այլ գործերի։

ՉԱՎԵՍ Ուգո Ֆրիաս Ռաֆայել (1954–2013), Վենեսուելայի նախագահ՝ 1999–ից։ 1992–ի պետ. հեղաշրջման ձախողումից հետո հիմնադրել է «Շարժում» հանուն «հինգերորդ հանրապետության» կուսյունը։ Չ–ի արտաքին քաղ–յունն ուղղված էր ԱՄՆ–ի ծավալապաշտ. քաղ–յան դեմ։ Չ–ի օրոք Վենեսուելան ճանաչել է (2005) Հայոց ցեղասպանությունը։

ՉԱՎԻՉԱ (Oncorhynchus tschawytscha), սաղմոնաձկների ընտանիքի գաղթող ձուկ։ Երկ.՝ մոտ 1 *մ*, կ. զ.՝ մինչև 10 (երբեմն՝ մինչև 50) *կգ*։ Ապրում է Խաղաղ օվկ–ի հս. մասում։ Արժեքավոր արդյունագործ., կլիմայավարժեցման և բազմացման ձուկ է։

ՉԱՎՆԴՈՒԲ, գվո *Ումնիք* նինգ–ում։ Հիշատակվում է XVII–XVIII դդ–ում։ Ընդգրկել է Ծավ գետի և նրա վտակների ավազանը։

ՉԱՏԱՆՈՒԳԱ (Chattanooga), ք. ԱՄՆ–ի Թեննեսի նահց–ում՝ Թեննեսի գետի ափին։ Բն.՝ 173 հզ. (2010)։ Մոտակայքում գործում են ԱԷԿ, ջրէկ և ջրակուտակում. էլեկտրակայան։

ՉԱՏԻՆՅԱՆ Աշոտ Աղվանի (ծ. 1959), մարզիկ–մանկավարժ։ Մանկավարժ. գիտ. դ–ր (2009), պրոֆ. (2011)։ ԽՍՀՄ ս. վ. (1979, մականախաղ)։ Աշխ–ները վերաբերում են մարդու շարժումների ճշգրտության հարցերին։

ՉԱՐԱՅՄԱԿՆԵՐ, ժողգ–ների (ջեմշիդներ, ֆիրյուզկուխներ, թայմաններ, թեյմուր–ներ) խումբ Աֆղանստանի հս–արմ–ում (1,4 մլն) և Իրանի հս–արլ–ում (209 հզ.)։ Ընդհ. թիվը՝ 1,6 մլն (2000)։ Հավատացյալ–ները հիմնականում սուննի մահմեդական են, Իրանում՝ շիաներ։

ՉԱՐԳԱՖ (Chargaff) Էրվին (1905–2002), ավստրիացի կենսաքիմիկոս։ 1928–ից՝ ԱՄՆ–ում։ Աշխ–ները վերաբերում են նուկլեինաթթուների քիմիային։ Հաստատել է ԴՆԹ–ի մոլ–ներում պուրինի և պիրիմիդինի հիմքերի հարաբերակցությունը (Չ–ի կանոն)։ Բացահայտել է ԴՆԹ–ի տեսակային առանձնահատկությունը։

ՉԱՐԴԱՇ (հունգ.՝ csárdás, < csárda – գյուղ. գինետուն), հունգ. ժող. և պարահանդես. պար։ Առավել տարածված էր XIX դ–ի կեսերին։ Երաժշտ. չափը՝ երկմաս կամ քառամաս, ռիթմը՝ սինկոպային։ Պարում են զույգերով։ Իրենց երկերում օգտագործել են Ֆ. Լիստը, Յ. Բրամսը, Լ. Դելիբը և ուր.։

ՉԱՐԵՆՑ (Սողոմոնյան) Եղիշե Արգարի (1897–1937), բանաստեղծ, արձակագիր, խմբ., թարգմանիչ։ 1926–28–ին աշխատել է «Խորհրդային Հայաստան» և «Նորք» պարբ–ներում, 1928–35–ին՝ Հայպետհրատում։ «Ծաղիկները հեզ թեքվում են...» (1912), «Երեք երգ տխրադալուկ աղջկան» (1914), «Հրո երկիր» (1913–16), «Տեսիլաժամեր» (1915), «Ծիածան» (1917) ժող–ներում հարել է սիմվոլիզմին։ «Կապուտաչեայ հայրենիք» (1915), «Դանթէական առասպել» (1916), «Վահագն» (1916), «Ազգային երազ» (1917) պոեմներում բանաստեղծին մտահոգողը հայրենիքի ճակատագիրն է։ 1918–21–ին և 1922–24–ին ստեղծած բանաստեղծ. շարքերը («Ողջակիզուող կրակ», 1918–20) և «Սոմա» (1918), «Ամբոխները խելագարուած» (1919), «Նայիրի երկրից» (1920), «Ռոմանս անսէր» (1920), «Չարենց–Նամէ» (1922) և այլ պոեմներն առանձնանում են ռոմանտիզմով և «ձախ» տրամադրություններով, ազգ. ողբերգությունների խտացումն է «Մահուան տեսիլ» (1920) բանաստեղծությունը։ Հեղինակ է նաև «Պոեմ հերոսական» (1925), «Խմբապետ Շավարշ» (1929) պոեմների, «Տաղարան» (1920–21) «Էպիքական լուսաբաց» (1930), «Գիրք ճանապարհի» (1934) ժող–ների, «Երկիր Նաիրի» (1926) պատմաքաղ. վեպի, «Հիշողություններ ուղղիչ տնից» (1927) հուշվիպակի։ Չ–ի անունով է կոչվել Գրկ–յան և արվ–ի թանգարանը, ՀԳՄ–ն սահմանել է գր. մրց.։ Երևանում գործում է *Չարենցի փոքր–թանգարանը*։

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ (մինչև 1967թ՝ Լուսավան), ք. (1961–ից) ՀՀ Կոտայքի մարզում՝ Երևանից 36 *կմ* հս՝ Հրազդան գետի ձախ ափին՝ 1600–1700 *մ* բարձր–ների վրա։ Բն.՝ 25,2 հզ. (2012)։ Կան մետաղագործ. և պատրաստի մետաղե իրերի արտադր–յան և այլ ձեռն–ներ։ Ունի երկթղ. կայարան։ Գործում են պատկերասրահ, Ե. Չարենցի տուն–թանգարանի մասնաճյուղը, գրադարան։ Քաղաքի մուտքը խորհրդանշում է «Վերածնունդ» հուշակոթողը (Եղիշե Չարենցի «Գանգրահեր տղան» պոեմի մոտիվներով, 1980, քանդ.՝ Խաչիկ Միրիջանյան)։ Հիմնադրվել է 1947–ին՝ որպես Գյումուշջրէկի (այժմ՝ Արգել) բանվան։ 1967–ին կոչվել է ի պատիվ Եղիշե *Չարենցի*։ 1953–ին՝ ջրէկի շին–յան ավարտից հետո դարձել է արդ. կենտրոն։

ՉԱՐԵՆՑԻ ՏՈՒՆ–ԹԱՆԳԱՐԱՆ, բացվել է Երևանում 1975–ին՝ Եղիշե *Չարենցի* ապրած բնակարանում (կառուցվել է 1935–37–ին, վերականգնվել՝ 1987–ին)։ Ցուցադրված են գրողի անձն. գրադարանը և իրերը, ձեռագրեր, փաստաթղթեր, լուսանկարներ, կերպարվ–ի գործեր, թերթեր, ամսագրեր, տեսաժապավեններ, ձայնագրություններ ևն։

ՉԱՐԵՔԱՎԱՆՔ, *Չարեքա անապատ*, ճարտ. համալիր Ուտիք նինգ–ի Գարդմանաձոր գվր–ում՝ Շամքոր գետի ափին (այժմ՝ Ադրբեջանի Գետաբեկի շրջանում)։ Վանքի Սբ Աստվածածին եկեղեցին (XVII դ.) 2 զույգ մույթերով եռանավ բազիլիկ է, որին արմ–ից կից է հվ. ճակատում եռակամար բացվածքով թաղածածկ գավիթը (1681), նրանից հս երկհարկ, 8–սյունանի ոտոնդաչայով զանգակատունն է (1659)։

ՉԱՐԵՔՅԱՆ Սուրեն Գաբրիելի (1901–1979), դիրիժոր։ Ուզբ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1944)։ ՀԽՍՀ ժող. արտիստ (1956)։ Պրոֆ. (1971)։ 1932–79–ին (ընդհատումով)՝ Երևանի (1957–64–ին՝ գլխ.), 1934–36–ին՝ Թիֆլիսի, 1936–44–ին՝ Տաշքենդի (գլխ.) ՕԲԹ–ների դիրիժոր։ Ղեկավարել է Լ. Խոջա Էյնաթյանի «Նամուս» (1945), Գ. Արմենյանի «Խաչատուր Աբովյան» (1960), Տ. Չուխաճյանի «Լերլերիջի» (1951) և ուզբ. մի քանի օպերաների առաջին բեմադրությունները։

ՉԱՐԸԳ Արամ, *Վտարանդի* (1874–1947), բանաստեղծ, մանկավարժ, թարգմանիչ։ 1912–15–ին՝ Կ. Պոլսի Օրթագյուղի ազգ. վարժարանի տնօրեն։ Մեծ եղեռնից հետո հաստատվել է Փարիզում։ Հեղինակ է «Բանաստեղծութիւններ» (1900), «Վայրի վարդեր Բաքուի փետրուարեան գերեզմաններին» (1905) բանաստեղծությունների, «Խորհրդային մեծ Հայաստան» (1945) բանաստեղծությունների ու հոդվածների ժող–ների, «Ս. Մեսրոպի տեսիլքը» (1913) պոեմի։ Պարսկ–ից թարգմանել է Օմար Խայամի քառյակները (1934)։

ՉԱՐՈՐԱԿ ՈՒԽՈՒՅՔ, ուռուցք, որին ընորոշ են շրջակա հյուսվածքների մեջ ներաճելու, դրանք քայքայելու և ճյուղավորվելու (մետաստազ առաջացնելու) հատկությունները։ Տարբերում են Չ. ու–ի 2 հիմն. տիպեր՝ քաղցկեղ և սարկոմա։ Չ. ու–ի շարքին են դասվում նաև *լեյկոզները*։

«ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ԵՐԳԵՐ», Հուդայի դավաճանության և Հիսուսի խաչելության մասին պատմող ու Ավագ շաբաթվա արարողության ժամանակ կատարվող ավետարան. տեքստերով երաժշտ. ստեղծագործություններ։ IV դ–ում եղել է երգ–արտասանություն, XIV դ–ից՝ մեներգչի և երգչախմբի փոխերգեցողություն, ապա երգամասերն անհատականացվել են։ XVII դ–ում ձևավորվել է «Չ. ե.»–ի օրատորիայի տեսակը (լավագույնները՝ Յ. Ս. Բախի պասսիոնները)։ Հայ հոգևոր երաժշտության մեջ «չարչարանաց» թեմային անդրադարձել են ասերգ. և երգ. մոնոդիկ ստեղծագործություններում (Սբ Պատարագի հատվածներ, շարականներ, երգեր, գանձեր, տաղեր)։

ՉԱՐՉՈՂԼՅԱՆ Աղասի Ենոքի (1907–1975), մարզ. գործիչ։ Մանկավարժ. գիտ. թեկնածու (1976)։ Ռոբերտ *Չարչօղլյանի* հայրը։ 1953–66 և 1969–75–ին՝ ՖԿՀՊԻ ռեկտոր։ Աշխ–ները վերաբերում են Հայաստանում ֆիզկուլտուրայի և սպորտի պատմությանը։

ՉԱՐՉՈՂԼՅԱՆ Ռոբերտ Աղասու (ծ. 1942), սրտաբան։ Բժշկ. գիտ. դ–ր (1968), պրոֆ. (1968)։ Աղասի *Չարչօղլյանի* որդին։ 1994–ից՝ ԱՄՆ–ում։ Ուսումնասիրել է սրտամկանի սուր ինֆարկտի ժամանակ սրտի փորոքների ծավալ. բնութագրերը, մշակել սուր ինֆարկտի բուժման եղանակներ։

ՉԱՐՋՈՒՄ (1999–ից՝ Թուրքմենբադ), ք. Թուրքմենստանում, նավակայան Ամուդարյա գետի ափին։ Բն.՝ 648 հզ. (2013)։ Երկղթ. հանգույց է։ Հիմնադրվել է 1886–ին։

ՉԱՐՏԵՐ (անգլ.՝ charter), բեռների, ուղևորների և ուղերեռների ծով. կամ օդ. փոխադրման պայմանագիր՝ տրանսպորտ. միջոցի տիրոջ և վարձակալի միջև՝ որոշակի ուղերթի կամ ժամկետի համար ամբողջ տրանսպորտ. միջոցի կամ նրա մի մասի վարձակալության վերաբերյալ։

ՉԱՐՏԻԶՄ (անգլ.՝ Chartism, < charter – չարտեր), աշխատավորների 1–ին զանգված. բանվ. շարժումը Մեծ Բրիտանիայում 1830–50–ական թթ–ին։ Չ–ի ծրագր.՝ «Ժողովրդական խարտիան» [«People's charter» (1838)] փաստաթղթում, առաջադրել են համընդհ. ընտր. իրավունքի (տղամարդկանց համար), գաղտնի քվեարկության, աշխ. օրվա կրճատման և այլ պահանջներ։ 1839, 1842 և 1848–ին չարտիստների խորհրդարան ներկայացրած հանրագրերը մերժվել են։

ՉԱՐՔՎԻԱՆԻ Քանսուղ Ավդիդի (ծ. 1931), վրացի գրող։ Հեղինակ է «Մեկ գիշերվա լռության մեջ» (1959), «Երկինք և շատրվան» (1961), «Արևաձագեր» (1970), «Հասցեներ» (1978), «Ես ու ես» (1984), «Երկրի ժամանակով» (1987), «Սև հովազ» (1988) բանաստեղծությունների և պոեմների ժող–ների։ Հայ. հրատարակվել է «Հավատի որմը» (1982) բանաստեղծությունների ժող–ը։ ՎԽՍՀ Պետ. մրց. (1985)։

ՉԱՈՒՇԵՍԿՈՒ (Ceauşescu) Նիկոլաե (1918–1989), Ռումինիայի նախագահ՝ 1974–ից։

1965–ից՝ Ռումինիայի կոմկուսի գլխ. քարտուղար, 1967–74–ին՝ Պետ. խորհրդի նախագահ: 1989–ի դեկտ. ապստամբության հետևանքով պաշտոնազրկվել է, ապա՝ գնդակահարվել:

ՉԱՈՒՇՅԱՆ Ալեքսանդր Հակոբի (1917–1991), թավջութակահար, մանկավարժ: ՀԽՍՀ վաստ. ուսուցիչ (1960): Արվ. վաստ. գործիչ (1989): Պրոֆ. (1984): Լևոն *Չաուշյանի* հայրը: Սաներից են Վ. Սարաջյանը, Լ. Մուրադյանը և ուր.:

ՉԱՈՒՇՅԱՆ Լևոն Ալեքսանդրի (ծ. 1946), կոմպոզիտոր: Պրոֆ. (2003): Ալեքսանդր *Չաուշյանի* որդին: 1995–ից՝ Հայկ. երաժշտ. համաժողովի հիմնադիր-նախագահ: Գրել է «Անհայտ զինվորին» սիմֆոնիան (1984, հանրապետ. մրցույթի 1–ին մրց., 1989), սիմֆ. պոեմներ (1969, 1971), կոնցերտներ, կվարտետներ [1980, 1983 («Տրիբունա ՅՈՒՆԵՍԿՕ» մրց.՝ 1983, Փարիզ), 1988, 1994], ռոմանսներ, վոկալ շարքեր, խմբերգեր ևն:

ՉԱՈՒ–ՉԱՈՒ, երկարամազ գեղազարդիչ շների սեռ: Բուծվել է Չինաստանում և Մանջուրիայում:

ՉԱՓ, 1. այն, որը հիմք է ծառայում ինչ-որ բան գնահատելու կամ ինչ-որ բանի հետ համեմատելու համար: 2. Այն, ինչով չափում են, օր.՝ երկ–յան չափ է ծառայում չափաքանոնը: 3. **Բազմության**, մաթ. հասկացություն, որը երկ–յան, մակերեսի, ծավալի ընդհանրացումն է ավելի լայն դասի՝ կետային, նաև կամայական տարրերից կազմված բազմությունների որոշ դասերի համար: Մաթ. վերլուծության մեջ հիմնականում օգտագործում են Լեբեգի չափերը: 4. Փիլ. կատեգորիա, որն արտահայտում է օբյեկտի քանակ. և որակ. բնութագրերի դիալեկտիկ. միասնությունը: Ցույց է տալիս այն սահմանը, երբ քանակ. փոփոխությունները հանգեցնում են օբյեկտի որակ. փոփոխությանը և հակառակը: 5. Համաչափություն, որն ընկած է երաժշտության մեջ՝ ռիթմի, հարմոնիայի, մեղեդու, ճարտ–յան մեջ՝ համակառույցի հիմքում ևն:

6. Չափածո խոսքի ռիթմ. կազմության հիմն. գործոնը: Կարող է վերաբերել թե՛ ամբողջությամբ բանաստեղծ. տողին, թե՛ տողի ներսում եղած չափ. միավորներին: Հայկ. բանաստեղծությանը բնորոշ Չ–երը տեսակավորել և բնութագրել է Մ. Աբեղյանը՝ իր «Հայոց լեզվի տաղաչափություն (մետրիկա)» (1933) աշխ–յան մեջ:

ՉԱՓԱԲԵՐՈՒՄ, հղկված մեքենամասերի կամ չափիչ գործիքների վերջնամշակում՝ ճշգրիտ չափեր և մակերևույթի փոքր անհարթություններ ստանալու համար: Կատարվում է չափաբերիչ հաստոցներով կամ ձեռքով՝ հղկանյութ. մածուկների կամ յուղահեղուկների օգտագործմամբ:

ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, չափագիտ–յան ազգ. մարմին: Ստեղծվել է 2004–ին, 2012–ին նրան միավորվել են Երևանի օպտիկաֆիզ. չափումների ինստ–ը (1981) և ռադիոֆիզիկայի ԳՀԻ–ն (1971): Զբաղվում է էլ., գազի և հեղուկների հաշվիչների, ուժի, ամրության և ճնշման չափման միջոցների, կշեռքների ու կշռաքարերի, գազալցակայանների, ժամանակի հաճախության և ռադիոէլեկտրոն. սարքավորումների, ֆիզքիմ., ջերմ., իոնացման և այլ չափումների սարքավորումների չափագիտ. հսկողությամբ (ստուգաչափում, փորձաքննություն, փորձարկում, տեսակի հաստատում ևն):

ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գիտ–յուն չափումների, դրանց միասնականությունն ու պահանջվող ճշգրտությունն ապահովելու մեթոդների մասին: Հիմն. խնդիրներն են՝ չափումների ընդհ. տեսության ստեղծումը, ֆիզ. մեծությունների միավորների ու նրանց համակարգերի կազմումը (**տեսական Չ.**), չափման մեթոդների ու միջոցների, չափումների ճշգրտության որոշման մեթոդների, չափումների միասնականության և չափման միջոցների միատեսակության հիմունքների մշակումը (**օրենսդրական Չ.**), չափանմուշների և չափման նմուշամիջոցների ստեղծումը, չափերի ու չափման միջոցների ստուգումը (**կիրառական Չ.**): Չ–յան զարգացման պատմ. փուլերն են՝ *մետրի* չափանմուշի հաստատումը (Ֆրանսիա, XVIII դ–ի վերջ), միավորների բացարձակ համակարգի ստեղծումը (Կ. Գաուս, 1832), Մետրական համաձայնագրի ստորագրումը (1875), *Միավորների միջազգային համակարգի* մշակումն ու հաստատումը (1960): Ռուսաստանը Մետրական համաձայնագրին միացել է 1893–ին, երբ Դ. Ի. Մենդելեևի գլխավորությամբ ստեղծվել էր Չափի և կշռի գլխ. պալատը (ներկայում՝ Չափագիտ–յան ինստ. Դ. Ի. Մենդելեևի անվ.):

Չ. պատմական, պատմության օժանդակ գիտաճյուղ, որն ուսումնասիրում է չափման միավորների, հարկ. և դրամ. համակարգերի պատմ. զարգացումը տարբեր ժողղ–ների մշակույթներում:

ՀՀ–ում Չ–յան ազգ. մարմինը *Չափագիտության ազգային ինստիտուտն* է:

ՉԱՓԱԾՈ, չափաբերված, ռիթմ. խոսք: Չ. կարելի է գրել բանաստեղծ. տարբեր տեսակի գործեր, վեպեր, թատերգություններ, նաև գիտ–տես. աշխ–ներ (Ն. Բուալո, «Քերթողական արվեստ», 1674) ևն: Չ. ըմբռնվում է իբրև ոտանավոր, բանաստեղծ. խոսք՝ որոշակի չափ. կազմությամբ առանձին տողերի հաջորդ. դասավորությամբ, որոնց կապակցված խմբերը կազմում են տներ, ռիթմ. պարբերություններ: Տես նաև *Բանաստեղծություն, Պոեզիա*:

ՉԱՓԱՅՆՈՒԹՅՈՒՆ (մաթ.), երկրչփ. պատկերի չափերի թիվը: Գծի Չ. 1 է, մակերևույթի (մասնավորապես՝ հարթության կամ նրա մասի) Չ.՝ 2, տարածության, նաև նրա ցանկացած մասի Չ.՝ 3 (երկրչփ. մարմին): Բազմաչափ տարածության հասկացության զարգացման հետ մաթ. սկսել են դիտարկել ցանկացած Չ–յան օբյեկտներ:

ՉԱՓԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅԱՆ, արտահայտություններ, որոնք ցույց են տալիս տվյալ մեծության կապը միավորների համակարգերի հիմքում դրված ֆիզ. մեծությունների հետ: Գրառվում է համապատասխան հիմն. մեծությունների խորհրդանիշերի արտադրյալի տեսքով՝ բարձրացված որոշակի աստիճանների, որոնք կոչվում են չափայնության ցուցիչներ: Օր.՝ արագացման (նշանակենք՝ a) չափայնությունը [a] = L. T^{-2} է, որտեղ L–ը երկ–յունն է, T–ն՝ ժամանակը, իսկ (–2)–ը ժամանակի չափայնության աստիճանը: Այն մեծությունները, որոնցում բոլոր հիմն. մեծությունները ներկայացված են 0–ի հավասար աստիճանով, կոչվում են չափազուրկ:

ՉԱՓԱՆՄՈՒՇ ՀԱՃԱԽՈՒԹՅԱՆ, հաճախության չափ, որն օժտված է հասանելի ամենամեծ ճշգրտությամբ: Որպես Չ. հ. ծառայում են էլ. տատանումների քվարց. գեներատորները, որոնք կայունացվում են քվանտ. գեներատորներով: Վերջիններում օգտագործվում են Cs և Rb ատոմների կամ NH_3 մոլ–ի քվանտ. անցումները: Չափանմուշների մեջ Չ. հ. ապահովում է ֆիզ. մեծությունների ամենամեծ վերարտադրելիությունը:

ՉԱՓԱՆՄՈՒՇԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿ, համաշխ. ժամանակ, որը համընկնում է ռադիոյով հաղորդվող ժամանակի ազդանշանների ակնթարթներին: Նշվում է թողարկվող ամփոփագրերում, որտեղ բերված են նաև համաշխ. և ատոմ. ժամանակների ամենօրյա տարբերությունները, և ժամանակի ծառայությունում:

ՉԱՓԱՆՄՈՒՇՆԵՐ չափագիտության մեջ, ճշգրիտ չափանմուշ կամ չափիչ սարքավորում, որը նախատեսված է չափման սանդղակի կամ չափման միավորի չափի վերարտադրման, պահպանման և չափման միջոցներին փոխանցման համար: Տվյալ երկրի համար որպես սկզբնական (ելման) հաստատված Չ. կոչվում են պետ., իսկ միջազգ. համաձայնությամբ հաստատվածները՝ միջազգ.:

ՉԱՓԵՐԻ ՄԵՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, չափերի տասնական համակարգ, որը հիմնված է երկ–յան մետրական չափի վրա: Չ. մ. հ–ի բազմապատիկ և մասային միավորները գտնվում են տասնական հարաբերության մեջ: Չ. մ. հ–ի հիմքի վրա ստեղծվել է *Միավորների միջազգային համակարգը*, որն ընդգրկում է չափման բոլոր տիրույթները:

ՉԱՓԻ ԵՎ ԿՇՌԻ ԳԼԽԱՎՈՐ ՊԱԼԱՏ Ռուսաստանի, կենտր. պետ. օդերևութաբան. հաստատություն Ռուսաստանում: Հիմնադրվել է 1893–ին՝ Դ. Ի. *Մենդելեևի* նախաձեռնությամբ: 1931–ին վերակազմակերպվել է Օդերևութաբանության և չափորոշման ինստ–ի, 1934–ից՝ Օդերևութաբանության ինստ.:

ՉԱՓԻՉ ՍԱՐՔ, չափման միջոց, որը հնարավորություն է տալիս անմիջապես հաշվելու (գրանցելու) չափվող մեծության արժեքները: Առավել տարածված են ուղղակի գործողության Չ. ս–երը՝ չափիչ փոխակերպիչները, և համեմատման Չ. ս–երը, որոնցում չափվող մեծությունը համեմատվում է համապատասխան չափի հետ (կշեռքներ, համեմատիչներ, պոտենցաչափներ):

ՉԱՓԻՉ ՏԵԽՆԻԿԱ, գիտ–յան և տեխնիկայի բնագավառ, որի ուսումնասիրության առարկան օբյեկտների (օր.՝ բնության երևույթներ, արտադր. շարժընթացներ) հատկությունները և վիճակը բնութագրող մեծությունների մասին փորձնական եղանակով տեղեկույթի ստացման համար միջոցների մշակումն ու ստեղծումն է:

ՉԱՓԻՉ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, տվյալների հաղորդման չափիչ սարքերի ու սարքավորումների համալիր, որն ապահովում է վերահսկվող օբյեկտի (մեքենաներ, համակարգեր, սարքեր, տեխնոլոգ. շարժընթացներ) վիճակի մասին չափիչ տեղեկույթի ավտոմատ հավաքում և հաղորդում՝ այն համակարգչով մշակելու կամ աչքով դիտելու (օր.՝ ցուցասարքի էկրանին) համար:

ՉԱՓՄԱՆ ՍԽԱԼԱՆՔ, չափման սխալներ, չափումների արդյունքների շեղումը չափվող մեծության իրական արժեքից: Կանոնավոր Չ. ս. պայմանավորված է հիմնականում չափման միջոցների սխալանքով և չափման մեթոդների անկա-

տարությամբ, պատահականը՝ չափման պայմանների չվերահսկվող փոփոխություններով, վրիպումները՝ չափման միջոցների անսարքություններով:

ՉԱՓՉԱԽՅԱՆ (Չափչախով) Լազար Սերգեյի (1911–1942), խորհրդ. ավիացիայի մայոր: ԽՄ հերոս (1942, հետմահու): Մասնակցել է Խորհրդա-ֆիննական պատերազմին, ՀՄՊ-ի ժամանակ 38-րդ կործանիչ ավիագնդի կազմում՝ Հս-արմ. ռազմաճակատի օդ. մարտերին: Կատարել է 368 մարտ. թռիչք: Պատերազմում հերոսի կոչման արժանացած 1-ին հայ զինվորականն է:

ՉԱՔԸՐՈՎ (Չաքրյան) Հակոբ (XX դ-ի 1-ին կես), բժիշկ: Բժշկագիտ. դ-ր, պրոֆ.: Բուլղարիայի վաստ. բժիշկ: ԵՀՊ-ից հետո աշխատել է Կարմիր խաչի հիվանդանոցում, Հակաքաղցկեղ. ինստ-ի հիմնադիր-տնօրենն՝ 1951-ից: Մշակել է 12-մատնյա աղիի խոցի վիրաբուժ. բուժման եղանակ, որը հայտնի է Չ-ի եղանակ անունով:

ՉԱՔՄԱՔՉՅԱՆ (Չագմագճյան) Արտո (Հարություն) Սուրենի (ծ. 1933), քանդ.: Կանադայի գեղարվ-ի թագավոր. ակադ-ի անդամ (1991): 1975-ից՝ Մոնրեալում: 1960-ական թթ-ին Չ. առաջիններից է անդրադարձել քանդակաձևերի արդիականացմանը և կերպավորման արտահայտչականությանը (մոր, Կոստան Զարյանի, երկուսն էլ՝ 1965, Կոմիտասի, 1969, դիմաքանդակներ, ևն): Հեղինակ է խորհրդանշ. գործերի («Երկու ծավալ», 1975, «Նստած մարմին., 1975, ևն), հուշարձանների («Կոմիտաս», 1983, Դետրոյտ), «Ապրիլյան հուշակոթող» (1984, Տորոնտո, ևն): Համահեղինակ է «Միջնադարյան Հայաստանի դեկորատիվ արվեստը» (ռուս., 1971) ալբոմի:

ՀՀ «Պատվո շքանշան» (2015), «Մովսես Խորենացի» (2005), ՄՆ ոսկե (2005) մեդալներ:

ՉԱՔՐՅԱՆ Հարություն Խաչիկի (1918–1944), կապիտան: ԽՄ հերոս (1945, հետմահու): ՀՄՊ-ի ժամանակ կռվել է Կովկասյան, Հվ., 4-րդ ուկր. ռազմաճակատներում: Հերոսի կոչման արժանացել է 1944-ի ապրիլ–մայիսին Ղրիմի մի շարք բնակավայրերի ազատագրման, դեպի Սևաստոպոլ առաջխաղացման, Սապուն Գորայի գրոհի ժամանակ ցուցաբերած խիզախության համար:

ՉԱՖԻ (Chaffee) Ռոջեր (1935–1967), ամերիկացի աստղագնաց-օդաչու: ՌԾՈՒԻ լեյտ.: Առաջին «Ապոլոն» տիեզերանավի անձնակազմի անդամ (8. Գրիսոմի և Է. Ռայթի հետ): Զոհվել է փորձարկումների ժամանակ: Չ-ի անունով է կոչվել Լուսնի խառնարաններից մեկը:

ՉԲԱՅՃՀԱՅՏՎԱԾ ԹՌՉՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐ (ՉԹՕ) (անգլ.՝ Unknovm Flying Objects –UFO), **թռչող ափսեներ**, մթն-ում հաճախ դիտվող գնդաձև, էլիպսոիդաձև և այլ տեսքի թռչող մարմիններ: Մի շարք դեպքերում պարզել են, որ դրանք մթն. օպտիկ. երևույթների հետևանքներ են կամ մշակվող ռազմ. օբյեկտներ: Կարծիքը, որ ՉԹՕ արտաերկր. քաղաքակրթության տիեզերանավեր են՝ վիճելի է:

ՉԵԲԻՇԵՎ (Չեբիշով) Պաֆնուտի Լվովիչ (1821–1894), ռուս. մաթեմատիկոս: Պետերբուրգյան մաթ. դպրոցի ստեղծողը: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1859): Ստեղծել է բազմանդամների օգնությամբ ֆունկցիաների լավագույն մոտարկումների տեսություն, հավանականության տեսության մեջ ապացուցել է մեծ թվերի օրենքը, թվերի տեսության մեջ՝ պարզ թվերի բաշխման ասիմպտոտիկ օրենքը են: Չ-ի աշխ-ները մաթ-ի նոր բաժինների զարգացման սկիզբն են դրել: Չ-ի անվան հետ են կապված Չ-ի անհավասարություն, բազմանդամ և զուգահեռագիծ հասկացությունները:

ՉԵԲՈԿՍԱՐԻ, ք., Չուվաշիայի վարչ. կենտրոնը (1925-ից), Սվինգստ Վոլգայի ափին: Բն.՝ 444,4 հզ. (2009): Հիմնադրվել է XIII դ-ում:

ՉԵԲՈՏԱԵՎ Վենիամին Պավլովիչ (1938–1992), ռուս. ֆիզիկոս: ՌԴԱ ակադ. (1992): Աշխ-ները վերաբերում են քվանտ. էլեկտրոնիկային, լազեր. սպեկտրադիտմանը (մասնավորապես՝ նեղ, ոչ գծային ռեզոնանսների ստացմանը և կիրառմանը, նոր տիպի լազերների ստեղծմանը ևն):

Լենինյան մրց. (1978):

ՉԵԲՈՏԱՐՅԱՆ Գայանե Մովսեսի (1918–1998), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1969): Պրոֆ. (1977): Գրել է դաշնամուր. տրիո (1945), «Հայաստան» պոեմ-կանտատը (1947), «Պրելյուդների և ֆուգաների շարք՝ հայկական ժողովրդական երաժշտության ձայնակարգերում» (1979, 1980):

ՉԵԴՎԻԿ (Chadwick) Ջեյմս (1891–1974), անգլիացի ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են ճառագայթաակտիվությանը, միջուկ. ֆիզիկային: Հայտնագործել է նեյտրոնը (1932), միջուկ. լուսաէֆեկտը (1934–35, աշխատակիցների հետ): Հետազոտել է արհեստ. ճառագայթաակտիվությունը, միջուկ. տրոհման շղթ. ռեակցիայի հնարավորությունը: Նոբելյան մրց. (1935):

ՉԵԶԱԼՊԻՆՈ (Ցեզալպինո, Cesalpino) Անդրեա (1519–1603), իտալացի բժիշկ, բուսաբան և փիլ.: Դասավանդել է Պիզայի համալսարանում և Հռոմի պապական «Իմաստության ուսումնարանում», եղել է Կղեմես VIII պապի բժիշկը: «Պերիպատետիկական հարցեր» ստեղծագործության մեջ քննադատել է Արիստոտելի սխալմունքի տեսությունը (1593): Հետազոտել է արյան շրջանառությունը: «Բույսերի մասին» (գիրք 1–6, 1583) աշխ-յան մեջ նկարագրել է բույսերի առանձին մասերի գործառույթները, առաջարկել բուս. թագավորության առաջին համակարգերից մեկը:

ՉԵԶԱՐԵ ԲՈՐՋԻԱ (Cesare Borgia, մոտ 1475–1507), Ռոմանիայի (Իտալիա) տիրակալը՝ 1499-ից: Օգտվելով հոր՝ Ալեքսանդր VI պապի (1503) հովանավորությունից՝ կենտր. Իտալիայում ստեղծել է ընդարձակ պետություն, որտեղ ունեցել է բացարձակ իշխանություն, իսկ նրա մահից (1503) հետո կորցրել է Ռոմանիան: 1506-ից՝ Նավարայի արքայի զորքերի հրամ. (կոնդոտիեր):

ՉԵԶՈՔԱՅՄԱՆ ՌԵԱԿՑԻԱ, *չեզոքացում*, թթվի և հիմքի համարժեք տարրաչափ. քանակների միջև ընթացող քիմ. ռեակցիա, որի արդյունքում ստացվում է աղ և ջուր, օր.՝ $HCl + NaOH = NaCl + H_2O$:

ՉԵԶՈՔՈՒԹՅՈՒՆ (միջազգ. իրավունքում), պատերազմող կողմերին ռազմ. օգնություն չցուցաբերելու, ռազմ. խմբավորումներին, ուրիշ պետությունների միջև մղվող պատերազմներին չմասնակցելու արտաքին քաղ. կուրս: Չ-յան պատմ. ձևերն են՝ լրիվ, ոչ լրիվ, բացարձակ, բարյացակամ, զինված և զինաթափված, ակտիվ և պասսիվ, կամավոր և պայմանագր., ժամանակավոր և մշտ.:

ՉԵԼԱԿՈՎՍԿԻ (Čelakovský) Ֆրանտիշեկ (1799–1852), չեխ բանաստեղծ, բանահավաք: Հավաքել և լույս է ընծայել «Սլավոնական ազգային երգեր» (հ. 1–3, 1822–27) ժող-ը: Հեղինակ է «Ռուսական երգերի արձագանքը» (1829), «Չեխական երգերի արձագանքը» (1839) ժող-ների:

ՉԵԼԵԲԻՈՒԹՅՈՒՆ (թուրք.՝ չելեր – աստված, չելերի – աստվածաշուք), Օսմ. կայսրությունում սեղանավորությամբ (տես *Սեղանավոր*) հարստացած հայ բուրժ. խավ XVI–XVII դդ-ում: Զբաղվել են խոշոր առևտր. գործունեությամբ, վարել արքունի արհեստապետության պաշտոններ, օսմ. արքունիքին վաշխով դրամ տրամադրել և ցուցաբերած հատուկ ծառայությունների համար արժանացել «չելեբի» պատվանվանը: XVIII դ-ի սկզբին տեղը զիջել է հայ ամիրայությանը:

«ՉԵԼԵՆՋԵՐ» («Challenger»), անգլ. նավերի անվանումը, 1. շոգիով աշխատող կորվետ, որով 1872–76-ին Չ. Ու. Թոմսոնի ղեկավարած արշավախումբը կատարել է օվկիանոսագիտ. շուրջերկրյա ճանապարհորդություն: 2. Առաջին արշավախմբային նավը, որով 1950-ական թթ-ին օվկիանոսագիտ. հետազոտություններ են կատարել Խաղաղ օվկ-ում: Ի հիշատակ «Չ.»-ի անվանել են խորջրյա հորատման «Գլոմար Չելենջեր» ԱՄՆ ԳՀ նավը, որը կառուցվել է 1968-ին: 3. ՆԱՍԱ-ի բազմակի օգտագործման տիեզերանավ, 2-րդ «*Սփռյա Շաթլ*»-ը:

ՉԵԼԵՆՏԱՆՈ (Celentano) Ադրիանո (ծ. 1938), իտալացի կինոդերասան, էստրադ. երգիչ, ռեժ.: Նկարահանվել է «Սերա-ֆինո», «Բլեֆ», «Կամակոր տղամարդու սանձահարումը», «Ջեկփոթ», «Բինգո-բոնգո» և այլ ֆիլմերում: Որոշ կինոնկարներում միաժամանակ հանդես է եկել որպես ռեժ., գլխ. դերակատար, կոմպոզիտոր և երգերի հեղինակ (մյուզիքլներ՝ «Յուպպի-Դու», 1970, «Ջոան Օս», 1986):

ՉԵԼԵՍՏ (իտալ.՝ celesta, < celeste – երկնային), որոշակի բարձրության ստեղնավոր (դաշնամուրի նման) երաժշտ. գործիք՝ նուրբ, զանգականման ձայնով: Ստեղծվել է 1886-ին: Գործածում են սիմֆ. նվագախմբերում:

ՉԵԼԼԻՆԻ (Cellini) Բենվենուտո (1500–1571), իտալացի քանդ., ոսկերիչ, գրող: Կատարյալ վարպետությամբ ստեղծել է նրբակերտ ոսկեչ. գործեր («Ֆրանցիսկ I-ի աղամանը», 1540–43), արտահայտիչ արձաններ («Պերսևս», 1545–54), բարձրաքանդակներ: Հեղինակ է ինքնակենսագր. (1558–62, հրտ.՝ 1728) և «Երկու աշխատություն ոսկերչական արվեստի ու քանդակագործության մասին» (1568) գրքերի:

ՉԵԼՅԱԲԻՆՍԿ, ք. ՌԴ-ում, համանուն մարզի վարչ. կենտրոնը՝ Հվ. Ուրալի արլ. լանջին՝ Միաս գետի ափին: Բն.՝ 1,1 մլն (2010): Կան սև, գունավոր մետաղաձուլ., մեքենաշին. և մետաղամշակման, քիմ. և այլ ձեռն-ներ: Գործում են բուհեր, թատրոններ, գավառագիտ. թանգարան, պատկերասրահ: Հիմնադրվել է 1736-ին:

ՉԵԼՅԱԲԻՆՍԿԻ ՄԱՐԶ, վտմ ՌԴ Ուրալյան դաշն. օկրուգում: Տարածքը՝ 88,5 հզ. *կմ*^{2}, բն.՝ 3,5 մլն (2009): Վարչ. կենտրոնը՝ *Չելյաբինսկ*: Կազմավորվել է 1934-ին: Արդյունահանում են գորշ ածուխ:

ՉԵԼՅՈՒՍԿԻՆ Սեմյոն Իվանովիչ (1700–1764), ռուս բևեռախույզ, 3-րդ կարգի

կապիտան (1760)։ 1741–42–ին մասնակցել է ռուս. կամչատկյան (Հս. Մեծ) 2–րդ արշավախմբին. նկարագրել է Թայմիր թ–կղզու ափի մի մասը, հասել Եվրասիայի հս. ծայրակետ (ներկայում՝ Չելյուսկինի հրվանդան)։

«ՉԵԼՅՈՒՍԿԻՆ», շոգենավ։ Կառուցվել է ԽՍՀՄ–ում 1933–ին, ջրատարողությունը՝ 7500 *տ*։ Անվանվել է ի պատիվ Ս. Ի. *Չելյուսկինի*։ 1933–ին փորձ է կատարվել «Չ.»–ով 1 նավագնացության ընթացքում Հս. ծով. ուղիով Մուրմանսկից Վլադիվոստոկ (արշավախմբի ղեկ.՝ Օ. Յ. *Շմիդտ*, կապիտան՝ Վ. Ի. *Վորոնին*)։ 13.02.1934–ին Չուկոտի ծովում «Չ.» ճզմվել է սառույցներով և ջրասույզ եղել։ Արշավախմբի մասնակիցներին սառույցի վրայից ցամաք են փոխադրել օդաչուները, որոնք ԽՍՀՄ–ում առաջինն են ստացել ԽՄ հերոսի կոչում։

ՉԵԼՅՈՒՍԿԻՆԻ ՀՐՎԱՆԴԱՆ, Եվրասիայի և ցամաքի ամենահս. կետը Թայմիր թ–կղզու հս–ում (հս. լայն–յան 77°43′, արլ. երկայն–յան 104° 18′)։ Գործում է բևեռ. կայան (1932–ից)։ Առաջին անգամ Չ. հ. է հասել Ս. Ի. *Չելյուսկինը* 1742–ին՝ Հս. Մեծ արշավախմբի կազմում։

ՉԵԼՆՈԿՈՎ Նիկոլայ Վասիլևիչ (1906–1974), ռուս օդաչու, ավիացիայի գեն–մայոր (1949)։ ԽՄ հերոս (1942, 1944)։ ՀՄՊ–ի ժամանակ եղել է գնդի, ապա՝ դիվիզիայի հրամ. Բալթ. և Սևծով. կործանիչ ավիացիայում։ Կատարել է 270 մարտ. թռիչք։

ՉԵԼՈՄԵՅ Վլադիմիր Նիկոլաևիչ (1914–1984), մեխանիկայի և կառավարման բնագավառի ռուս. գիտնական։ ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1962)։ Սոց. աշխ. հերոս (1959, 1963)։ Ղեկավարել է կրող հրթիռի և «Պրոտոն», «Պոլյուս» ԵԱՀ–ների, «Սալյուտ» տիպի ուղեծրակայանի մշակումները։ Աշխ–ները վերաբերում են տատանումների տեսությանը, առաձգ. համակարգերի կայունության, մեքենաների դինամիկայի և այլ հարցերի։

Լենինյան (1959), ԽՍՀՄ Պետ. (1967, 1974, 1982) մրց–ներ։

ՉԵԼՊԱՆՈՎ, Գեորգի Իվանովիչ (1862–1936), ռուս. հոգեբան և տրամաբան։ 1912–23–ին՝ Մոսկվայի հոգեբ–յան ինստ–ի տնօրեն։ Հոգեֆիզ. զուգահեռականության կողմնակիցներից։ Աշխ–ները վերաբերում են փորձարար. հոգեբ–յանը։

ՉԵԽ (Čech) Էդուարդ (1893–1960), չեխ մաթեմատիկոս։ Չեխոսլովակիայի ԳԱ ակադ. (1952)։ Աշխ–ները վերաբերում են դիֆերենցիալ երկրչփ–յանը և տոպոլոգիային։ Էական ավանդ ունի երկկոմպակտ տարածությունների տեսության և հոմոլոգ. ինվարիանտների ընդհ. տեսության զարգացման մեջ։ ՀՍՍՀ Պետ. մրց. (1951, 1954)։

ՉԵԽ Սվատոպլուկ (1846–1908), չեխ գրող։ Հեղինակ է «Ստրուկի երգերը» (1894), «Տափաստան» (1908) ռոմանտիկ. պոեմների, «Պան Բրոուչեկի ճանապարհորդությունը XV հարյուրամյակում» (1888) երգիծ. վիպակի, նաև բանաստեղծությունների ժող–ների։ Հայ. հրատարակվել է «Գիւղի սուրբը» (1892) գործը։

ՉԵԽԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐ, 1. **1547**, Հաբսբուրգների դեմ 1–ին խոշոր ապստամբությունը Չեխիայում (փետր–օգոստ.)։ Չնավորված չեխ. սեյմը մարտին Ֆերդինանդ I Հաբսբուրգից պահանջել է սեյմի կանոնավոր հրավիրում, թագավոր ընտրելու իրավունք ևն։ Ճնշվել է այսպես կոչված Արյունոտ սեյմի (1547–ի օգոստ.) միջոցով։ 2. **1618–20**, չեխ ժողդ–ի ապստամբությունը Հաբսբուրգների դեմ։ Սկիզբ է դրել Երեսնամյա պատերազմին (1618–48)։ 1620–ին չեխ–մորավ. զորքերը Սպիտակ լ–ան մոտ պարտություն են կրել և մինչև 1918–ը Չեխիան մնացել է Հաբսբուրգների տիրապետության տակ։ 3. **1775**, գյուղաց. խոշորագույն ապստամբությունը (մարտ–օգոստ.) Չեխիայում և Մորավիայում XVI–XVIII դդ–ում։ Ճնշել են կայսեր. զորքերը, սակայն կառ–յունը ստիպված նվազեցրել է կոռը (1775)։

ՉԵԽԱԿԱՆ ԾՈՎԱԽՈՐՇ, Բարենցի ծովում՝ ՌԴ ափերի մոտ՝ Կանին թ–կղզու և մայրցամաքի միջև։ Երկ.՝ 110 *կմ*, լայն.՝ մինչև 130 *կմ*, խոր. մուտքի մոտ՝ 55 *մ*։ Թափվում են Օմա, Պեչա և Չեշա գետերը։

ՉԵԽԵՐ (ինքնանվանումը՝ չեշի), Չեխիայի հիմն. բնակչությունը (9,6 մլն՝ ներառյալ 380,5 հզ. մորավիացիները, 2001)։ Ապրում են նաև Սլովակիայում (շուրջ 45 հզ.), ԱՄՆ–ում (513,6 հզ., 2000), Կանադայում (98,1 հզ.) ևն։ Լեզուն՝ չեխ.։ Հավատացյալները հիմնականում կաթոլիկ են, կան նաև բողոքականներ։

ՉԵԽԵՐԵՆ, *չեխերի* լեզուն, Չեխիայի պետ. լեզուն։ Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի սլավոն. ճյուղին։ Գրի հիմքում լատ. այբուբենն է։

ՉԵԽԻԱ (Čechy), **Չեխիայի Հանրապետություն** (Česká Republika), պետություն Արլ. Եվրոպայում։ Սահմանակից է Գերմանիային, Լեհաստանին, Սլովակիային և Ավստրիային։ Տարածքը՝ 76,87 հզ. *կմ*², բն.՝ 10,5 մլն (2015)։ Մայրաքաղաքը՝ *Պրահա*։ Պետ. լեզուն՝ չեխ.։ Կառավարման ձևը՝ հանրապետ.։ Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը։ Բաժանված է 13 վարչ. մարզերի։ Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է։ Անդամակցում է ՄԱԿ–ին, ԵՄ–ին, ՆԱՏՕ–ին, ԵԱՀԿ–ին, ԵԽ–ին, Առտհկ–ին ևն։ ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 19,5 հզ. ԱՄՆ դոլար է (2013)։ Արտահանում է ավտոմեքենաներ, քիմիկատներ, նավթամթերք, գարեջուր ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթ, դեղորայք, սննդամթերք ևն։ Դրամ. միավորը՝ չեխ. կրոն։

Չ–ի տարածքում մ. թ. ա. II դ–ից բնակվել է բոյերի կելտ. ցեղը։ Մ. թ. սկզբին գերմ. ցեղերի (մարկոմաններ և ուր.) ներխուժման հետևանքով կելտ. պետությունը թուլացել է։ I հզ–ամյակի կեսին Չ–ում գերակշռել են սլավոն. ցեղերը։ VII դ–ում Չ–ի տարածքը մտել է Սամո պետության, IX–X դդ–ի սկզբին՝ Մեծ Մորավ. տերության մեջ։ IX դ–ում Չ–ում տարածվել է քրիստոնեությունը։ X դ–ում Պրժեմիսլովիչների գլխավորությամբ կազմավորված Պրահայի իշխանությունը դարձել է վաղավատ. չեխ. պետության միջուկը։ 1085–ին իշխանն ստացել է թագավոր. թագ (1198–ից Չ. դարձել է ժառանգ. թագավորություն)։ XI–XII դդ–ում ենթարկվել է գերմ. ավատների հարձակումներին։ 1241–ին, ջախջախվել են Մորավիա ներխուժած մոնղոլ–թաթարները։ XIII դ–ի վերջ–XIV դ–ի 1–ին կեսին Չ–ում ձևավորվել է ավատ. միապետություն։ Պրժեմիսլովիչների հարստությունից (1306) հետո՝ 1310–ին, չեխ. հողերն անցել են Լյուքսեմբուրգներին։ Կառլոս I թագավորի (1333–ից՝ Չ–ի և Մորավիայի փոխարքա, 1346–78–ին՝ Չեխիայի թագավոր, միաժամանակ՝ Հռոմ. սրբազան կայսրության կայսր՝ Կառլոս IV անունով) օրոք աճել է Պրահայի նշանակությունը, և չեխ թագավորներին տրվել են կուրֆյուրստի իրավունքներ (1356)։ 1344–ին հիմնադրվել է Պրահայի արքեպիսկոպոսությունը, 1348–ին՝ Պրահայի համալսարանը։ XV դ–ի 1–ին կեսին Չ–ում սկիզբ է առել ազգ–ազատագր. և հակակաթոլիկ. շարժում (տես *Հուսյան հեղափոխական շարժում*)։ 1526–ին Չ. ընկել է Հաբսբուրգների իշխանության տակ՝ պահպանելով որոշակի ինքնուրույնություն, սակայն 1618–20–ի ապստամբության պարտությունից հետո վերածվել է պրովինցիայի։ XVIII դ–ի վերջ–XIX դ–ի 1–ին կեսին Չ–ում սկսվել է ազգ. շարժում (Չեխ. վերածնունդը), որը 1830–40–ին ստացել է քաղ. բնույթ։ 1848–ի Սվյատովացլավյան ժողովը Պրահայում սկզբնավորել է 1848–49–ի հեղ–յունը Հաբսբուրգների կայսրությունում։ 1867–ին Չ. մտել է Ավստրո–Հունգարիայի ավստր. մասի մեջ։ Ավստրո–Հունգարիայի փլուզումից հետո Չ. և Սլովակիան միավորվել են Չեխոսլովակյան Հանրապետության մեջ։ 1938–ի հոկտ–ին Գերմանիան բռնազավթել է Սուդետյան մարզը, իսկ 1939–ին՝ ողջ Չ.։ Ազատագրվել է խորհրդ. բանակի օգնությամբ, որից հետո Չ. և Սլովակիան դարձյալ վերամիավորվել են որպես Չեխոսլովակիայի Դաշնային Հանրապետություն, որը մինչև 1989–ը կառավարել է չեխոսլովակ. ԿԿ–ն։ 1993–ին Չ. և Սլովակիան փոխադարձ համաձայնությամբ բաժանվել, վերածվել են ինքնիշխան պետությունների։ 1999–ին անդամակցել է ՆԱՏՕ–ին, իսկ 2004–ին՝ ԵՄ–ին։

Չ–ում ներկայում (հիմնականում՝ Պրահայում) բնակվում է 8–10 հզ. հայ (ոչ պաշտոն. տվյալներով)։ Բացվել է հայկ. առաջին շաբաթօրյա դպրոցը։ 1999–ից Պրահայում հրատարակվում է *«Օրեր»* համաեվրոպ. ամսագիրը։

ՉԵԽԻԱՅԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ, հիմնադրվել է 1992–ին Պրահայում։ Չեխիայի թագավոր. գիտ. ընկ–յան (1784), Չեխիայի գիտ–յունների և արվեստների ակադ–ի (1890), Չեխոսլովակիայի ԳԱ–ի (1952) իրավահաջորդն է։ 2015–ին ուներ շուրջ 60 ԳՀ։

ՉԵԽՈՆ (Pelecus cultratus), ծածանաձկների ընտանիքի ձուկ։ Երկ.՝ մինչև 15 *սմ*, կ. զ.՝ 500–600 *գ* (մինչև՝ 2 *կգ*)։ Ապրում է Բալթիկ, Սև, Կասպից և Արալի ծովերում, լճերում և ջրամբարներում։ Արդյունագործ. ձուկ է։

ՉԵԽՈՍԼՈՎԱԿԻԱ (Československo), պետություն Կենտր. Եվրոպայում (գոյություն է ունեցել մինչև 1993–ը)։ Որպես Չեխոսլովակիայի Հանրապետություն՝ կազմավորվել է 1918–ին՝ չեխ. և սլովակ. տարածքներում։ 1960–90–ի մարտին կոչվել է Չեխոսլովակիայի Սոց. Հանրապետություն (ՉՍՍՀ)։ 1990–ից՝ Չեխիայի և Սլովակիայի Դաշն. Հանրապետություն (ՉՍԴՀ)։ 1992–ի նոյեմբ–ին ՉՍԴՀ–ն օրենքով դադարեցրել է գոյությունը, բաժանվել է Չեխիա և Սլովակիա անկախ պետությունների։

ՉԵԽՈՎ Անտոն Պավլովիչ (1860–1904), ռուս գրող, դրամատուրգ։ Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. անդամ (1900–02)։ Ստեղծագործության հիմն. թեման մտավորականության հոգևոր մաքառումներն են («Տաղտկալի պատմութիւն», 1889, «Մ'ենամարտ», 1891, «Վերնահարկով տունը», 1896, «Իոնիչ», 1898)։ «Կանանց թագավորություն» (1894), «Տղաները» (1897), «Շնիկով տիկինը» (1899), «Աղջա–

մուղջում» (1900) պատմվածքներում շեշտել է գեղջկ. կյանքի դաժանությունները: «Հիվանդասենյակ № 6» (1892), «Մարդը պատյանի մեջ» (1898) պատմվածքներում հասել է սոցիալ. և գեղ. մեծ ուժի ընդհանրացման: «Ճայ» (1896), «Քեռի Վանյա» (բեմ.՝ 1899), «Երեք քույր» (1901), «Բալենու այգին» (1904) պիեսներով ստեղծել է դրամայի նոր տեսակ՝ նախապատրաստելով ռուս. հոգեբ. թատրոնի երևան գալը: «Գեղեցկուհիներ» (1889) պատմվածքում կերտել է գեղեցիկ հայուհու կերպար: Չ-ի պիեսները բեմադրվել են հայկ. թատրոններում: Չ-ի գործերի մեծ մասը թարգմանվել է հայ.:

ՉԵԽՈՎ Միխայիլ Ալեքսանդրովիչ (1891–1955), ռուս դերասան, մանկավարժ: ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1924): Ա. Պ. *Չեխովի* զարմիկը: 1912-ից՝ ՄԳԹ, ՄԳԹ 1-ին, ապա՝ ՄԳԱԹ 2-րդ (1924–28-ին՝ գեղ. ղեկ.) ստուդիաների դերասան (Էրիկ՝ Ա. Սթրինդբերգի «Էրիկ XIV», Համլետ՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», Խլեստակով՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», ևն): 1928-ից՝ արտերկրում: Հեղինակ է «Դերասանի տեխնիկայի մասին» (1946) աշխ-յան:

ՉԵԿ (Cech) Թոմաս Ռոբերտ (ծ. 1947), ամերիկացի մոլ. կենսաբան: Հետազոտել է գենետիկ. տեղեկույթի փոխանցման մեխանիզմները: Բացահայտել է (Ս. *Օլտմենի* հետ) ռիբոնուկլեինաթթուների (ռիբոզիմներ) ֆերմենտ. ակտիվությունը: Նոբելյան մրց. (1989, Ս. Օլտմենի հետ):

ՉԵԿԱՆԱՈՒՍԿԱՍ (Čekanauskas) Վիտաուտաս (1930–2010), լիտվացի ճարտ.: ԽՍՀՄ ժող. ճարտ. (1975): Համահեղինակ է Վիլնյուսի Լաձինայ բնակելի շրջանի (1967–70-ական թթ-ի սկիզբ) կառուցապատման: Լենինյան մրց. (1974):

ՉԵԿԱՆՈՎՍԿԻ Ալեքսանդր Լավրենտևիչ (1833–1876), Սիբիրի լեհ հետազոտող: Լեհ. ապստամբությանը մասնակցելու պատճառով 1863–64-ին աքսորվել է Մերձբայկալ: 1869–75-ին հետազոտել է Պրիմորիեի լ-շղթան, Միջինսիբիր. սառահարթը, Ստորին Տունգուսկա, Օլենեկ գետերը, Լենայի ստորին հոսանքի հատվածը: Հայտնագործել է բլրաշար, որը կոչվել է իր անունով:

ՉԵԿԿԵՏԻ (Cecchetti) Էնրիկո (1850–1928), բալետի իտալացի արտիստ, բալետմայստեր, մանկավարժ: 1885-ից՝ Միլանի «Լա Սկալա» թատրոնի առաջատար պարող, 1887-ից՝ Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնի մենապարող, 1890-ից՝ բալետմայստեր: 1911–21-ին՝ Դյագիլևի ռուս. բալետի գլխ. մանկավարժ-փորձավար: Պարի դպրոցներ է հիմնադրել Լոնդոնում (1918), Միլանում (1925):

ՉԵԿՄԱՐՅՈՎ Ալեքսանդր Պետրովիչ (1902–1975), ռուս մետաղագործ: Ուկր. ԽՍՀ (1948), ԽՍՀՄ (1968) ԳԱ-ների ակադ.: Սոց. աշխ. հերոս (1972): Աշխ-նե-րը վերաբերում են գլոցման տեսությանը և սարքավորումների բարելավմանը, նոր տեխնոլոգ. շարժընթացների մշակմանը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1949):

ՉԵՄԲԵՌԼԵՆ (Chamberlain) Նևիլ (1869–1940), Մեծ Բրիտանիայի պետ. գործիչ: 1937–40-ին՝ վարչապետ: Պահպանող. կուս-յան ղեկ-ներից: Ջ. *Չեմբեռլենի* որդին, Օ. *Չեմբեռլենի* եղբայրը: 1918-ից՝ պառլամենտի անդամ: 1922–23-ին՝ փոստի, 1923, 1924–29 և 1931-ին՝ առողջապահության, 1923–24 և 1931–37-ին՝ ֆինանսների նախարար:

ՉԵՄԲԵՌԼԵՆ Ջոզեֆ (1836–1914), Մեծ Բրիտանիայի պետ. գործիչ: Ն. և Օ. *Չեմբեռլենների* հայրը: 1880–85 և 1886-ին՝ Ու. *Գլադստոնի* կառ-յան մեջ: 1895–1903-ին՝ գաղութների նախարար:

ՉԵՄԲԵՌԼԵՆ Օստին (1863–1937), Մեծ Բրիտանիայի պետ. գործիչ: Ջ. *Չեմբեռլենի* որդին, Ն. *Չեմբեռլենի* եղբայրը: 1892-ից՝ պառլամենտի անդամ: 1902-ին՝ փոստի, 1903–05 և 1919–21-ին՝ ֆինանսների, 1915–17-ին՝ Հնդկաստանի գործերով, 1931-ին՝ ծով. նախարար: Հանդես է եկել հօգուտ Գերմանիայի վերառազմականացման: 1927-ին՝ ԽՍՀՄ-ի հետ դիվանագիտ. հարաբերությունների խզման նախաձեռնողներից:

Նոբելյան Խաղաղության մրց. (1925):

ՉԵՄԲԵՌԼԵՆ Օուեն (1920–2006), ամերիկացի ֆիզիկոս: Հայտնագործել է (1955, ուր. հետ) հակապրոտոնը: Ատոմ. ռումբի ստեղծողներից:

Նոբելյան մրց. (1959, Է. *Սեգրեի* հետ):

ՉԵՄԲԵՐՋԻ (Չեմբերջյան) Նիկողայոս Կարապետի (1903–1948), կոմպոզիտոր: Բաշկիր. ԽԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1944): Բաշկիր. օպերայի հիմնադիրը [«Կաոլուգաս» («Ծիծեռնակ», 1941)]: Հեղինակ է սյուիտների («Տաջիկական սյուիտ», 1932, «Ուզբեկական սյուիտ», 1938), լար. կվարտետների, «Հայաստան» (1944) սիմֆ. պոեմի, թատեր. երաժշտության ևն: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946):

ՉԵՄԲԵՐՋՅԱՆ (Ջամբարջի) Գաբրիել Հովհաննեսի (ծ. 1952), բարերար, «*Փյունիկ*» հիմնադրամի հիմնադիր-պատվո նախագահ (1998): ՀՀ-ում բարեգործ. ծրագրեր է իրականացնում 1994-ից:

ՀԱԵ «Սբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշան (2008):

ՉԵՄԵՍՈՎ Եվգրաֆ Պետրովիչ (1737–1765), ռուս. փորագրող: Ս. Պետերբուրգի գեղարվ-ի ակադ-ում հիմնադրել և ղեկավարել է (1762–65) փորագրության դասարանը: Փորագրադիմանկարներն աչքի են ընկնում նրբությամբ և արտահայտիչ հնարքներով (Ի. Ի. Շուվալովի, 1760, կայսրուհի Եկատերինա II-ի, 1760-ական թթ., և ուր.):

ՉԵՅՄԲԵՐՍ (Chambers) Ուիլյամ (1723–1796), շոտլանդացի ճարտ., քանդ.: Լոնդոնի Գեղարվ-ի թագավոր. ակադ-ի անդամ (1768): Ընդարձակել է Կիյուի թագավոր. բուսաբ. այգին, կառուցել Մեծ պագոդան, 1776–96-ին Լոնդոնում՝ Սոմերսեթ Հաուսի նոր շենքը ևն:

ՉԵՅՆ (Chain) Էռնստ Բորիս (1906–1979), գերմանացի կենսաքիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1976): 1933-ից՝ Մեծ Բրիտանիայում: Անջատել է մաքուր պենիցիլինը և հաստատել նրա քիմ. կառուցվածքը:

Նոբելյան մրց. (1945, Ա. *Ֆլեմինգի* և Հ. *Ֆլորիի* հետ):

ՉԵՆԴԵ, ք. Հս. Չինաստանում՝ Հերեյ պրովինցիայում: Բն.՝ 450 հզ. (2009): Կան սև և գունավոր մետաղաձուլության ձեռն-ներ:

ՉԵՆԴՈՒ, ք. Կենտր. Չինաստանում՝ Սինցզյան գետի ափին, Սիչուան պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 3,9 մլն (2010, արվարձաններով՝ 4,7 մլն): Տրանսպորտ. հանգույց է, ունի օդանավակայան: Կան օդանավաշին., տեքստիլ արդ-յան և այլ ձեռն-ներ: Հիմնադրվել է մ. թ. ա. IV դ-ում:

ՉԵՆՆԱՒ (մինչև 1996-ը՝ Մադրաս), ք-նվինգստ Հնդկաստանի հվ-ում, Թամիլնադ նահանգ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 4,6 մլն (արվարձաններով՝ 7,4 մլն, 2010): Տրանսպորտ. հանգույց է, ունի օդանավակայան: Կան SS և կենսատեխնոլոգիաների բնագավառի ընկ-ներ: Զրոսաշրջ-նային կենտրոն է: Հիմնադրվել է 1639-ին:

Չ-ի հայ համայնքը կազմավորվել է XVI դ-ում: 1547-ին Սբ Թովմայի բլրի վրա կառուցվել է Հնդկաստանում 1-ին հայկ. եկեղեցին, 1712-ին՝ Սբ Աստվածածինը: 1783-ին մադրասահայերը կազմել են «Տետրակ, որ կոչի նշաւակ» համայնք. կանոնադրությունը: 1770-ական թթ-ին հիմնվել է *Մադրասի խմբակը*, 1772-ին Շահամիր *Շահամիրյանը* հիմնադրել է տպարան, Հարություն *Շմավոնյանի* ջանքերով 1794-ին լույս է տեսել հայ մամուլի առաջնակը՝ «*Ազդարար*»-ը:

ՉԵՆՍԼՈՐ (Chancellor) Ռիչարդ (ծ. թ. անհտ–1556), անգլիացի ծովագնաց: Մասնակցել է Հս-արլ. անցուդին որոնող Հ. Ուիլոբիի արշավախմբին: 1553-ին հասել է Հս. Դվինայի գետաբերան: Մոսկվայում նրան ընդունել է *Իվան IV*-ը: Թողել է գրառումներ Մոսկովյան պետության մասին:

ՉԵՉԵՆԵՐԵՆ, *չեչենների* լեզուն: Չեչնիայի և Դաղստանի պետ. լեզուներից: Պատկանում է իբերա-կովկաս. լեզվաընտանիքի նախյան խմբին: Գրի հիմքում արաբ. (մինչև 1925-ը), լատ. (1925–37), ռուս. (1938-ից) այբուբենն է:

ՉԵՉԵՆՆԵՐ (ինքնանվանումը՝ նոխչիյ), ժողգ ՌԴ-ում, Չեչնիայի հիմն. բնակչությունը (1,206 մլն): Ապրում են նաև Ինգուշեթիայում (18,7 հզ.), Դաղստանում (93,7 հզ.) ևն: Ընդհ. թիվը՝ 1,555 մլն, ՌԴ-ում՝ շուրջ 1,4 մլն (2010): Լեզուն՝ չեչեն.: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են:

ՉԵՉՈՒԼԻՆ Դմիտրի Նիկոլաևիչ (1901–1981), ռուս. ճարտ.: ԽՍՀՄ ժող. ճարտ. (1971): ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի ակադ. (1979): Սոց. աշխ. հերոս (1976): Հեղինակ է Մոսկվայի մետրոպոլիտենի կայարանների, համահեղ.՝ Կոտելնիկովոյի առափնյա բարձրահարկ բնակելի տան (1948–52), «Ռոսիա» հյուրանոցի (1967–70), ՌԴ կառ-յան տան (1981) նախագծերի:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1949, 1953):

ՉԵՊՄԵՆ (Chapman) Սիդնի (1888–1970), անգլիացի մաթեմատիկոս և երկրաֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են գազերի կինետիկ տեսությանը, Երկրի մագնիսականությանը, իոնոլորտին, մթն. էլեկտրականությանը և օպտիկային: Առաջարկել է մթն. օզոնի, իոնոլորտ. շերտերի առաջացման տեսություն: Արտածել է նոսրացված գազերի կինետիկ հավասարում (Չ–Էնսկոգի հավասարում):

ՉԵՋՈՒ, ք. Կորեայի Հանրապետությունում, նվինգստ Արևելաչին. ծովի Չեջու նեղուցի ափին, *Չեջուդո* կղզու (ունի պրովինցիայի կարգավիճակ) վարչ. կենտրոնը: Բն.՝ 605 հզ. (2014):

ՉԵՐՆԱՎԻՆ Վլադիմիր Նիկոլաևիչ (ծ. 1928), խորհրդ. ծովակալ (1983): ԽՄ հերոս (1981): 1977-ից՝ Հս. նավատորմի գլխ. հրամ., 1981-ից՝ ԳԾ պետ և ԽՍՀՄ ՌԾՈՒ գլխ. հրամ-ի 1-ին տեղակալ: 1985–92-ին՝ ԽՍՀՄ ՌԾՈՒ գլխ. հրամ. և պաշտպ-յան նախարարի տեղակալ:

ՉԵՌՆԵՆԿՈ Կոնստանտին Ուստինովիչ (1911–1985), խորհրդ. կուս. և պետ. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1976, 1981, 1984): 1984-ից՝ ԽՄԿԿ ԿԿ գլխ. քարտուղար, ԽՍՀՄ ԳԽ նախագահության նախագահ (1984-ից): Լենինյան մրց. (1982):

ՉԵՌՆԻԳՈՎ, ք. Ուկրաինայում, Համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 294, 5 հզ. (2014):

ՉԵՌՆԻԳՈՎԻ ՄԱՐԶ, վտմ Ուկրաինայում: Տարածքը՝ 31,9 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1 մլն (2014): Վարչ. կենտրոնը՝ *Չեռնիգով*:

ՉԵՌՆԻՇԵՎՍԿԻ Նիկոլայ Գավրիլովիչ (1828–1889), ռուս հրապարակախոս, գրաքննադատ, գրող: 1856–62-ին՝ *«Սովրեմեննիկ»* ամսագրի ղեկ-ներից: Եղել է 1860-ական թթ-ի հեղ. շարժման գաղափարախոսը: Մասնակցել է *«Զեմլյա ի վոլյա»* հեղ. կազմ-յան ստեղծմանը: 1864-ին աքսորվել է Սիբիր: «Ռուս գրականության գոգոլյան շրջանի ուրվագծեր» (1855–56, հայ.՝ 1953), «Լեսինգ: Նրա ժամանակը, կյանքն ու գործունեությունը» (1857) և այլ գրաքննադատ. աշխ-ներում զարգացրել է Վ. Գ. *Բելինսկու* ավանդույթները: Հեղինակ է նաև «Ինչ անել» (1863), «Նախերգանք» (հրտ.՝ 1871) վեպերի:

Չ-ու համախոհն ու գինակիցն է եղել Միքայել *Նալբանդյանը*:

ՉԵՌՆԻՇՈՎ Ալեքսանդր Իվանովիչ (1785/86–1857), ռուս. հեծելազորի գեն. (1826): 1808–12-ին՝ ռազմ. գործակալ Փարիզում: 1832–52-ին՝ ռազմ. նախարար, 1848–56-ին՝ Պետ. խորհրդի նախագահ:

ՉԵՌՆԻՇՈՎ Արկադի Իվանովիչ (1914–1992), տափօղակով հոկեյի ռուս. դպրոցի հիմնադիրներից: ԽՍՀՄ ս. վ. վ. (1948), վ. մ. (1956): ԽՍՀՄ ֆուտբոլի (1937, 1940) և հոկեյի (1947) չեմպիոն: 1954–57 և 1961–72-ին՝ ԽՍՀՄ հոկեյի հավաքականի մարզիչ:

ՉԵՌՆԻՇՈՎ Զախար Գրիգորևիչ (1722–1784), ռուս ռազմ. և պետ. գործիչ: Գեներալդմ. (1773): Մասնակցել է 1760-ի Բեռլինի գրավմանը: 1773-ից՝ Ռազմ. կոլեգիայի նախագահ, 1775-ից՝ Պոլոցկի և Մոգիլյովի նահանգապետ: 1782-ից՝ Մոսկվայի զորքերի գլխ. հրամ.:

ՉԵՌՆԻՇՈՎ Վասիլի Իլյիչ (1866/67–1949), ռուս. լեզվաբան: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1931): Հեղինակ է ռուս-ին, բարբառագիտ-յանը, բանահյուսությանը, ազգագրությանը, XIX դ-ի ռուս գրողների լեզվին ու ոճին վերաբերող աշխ-ների, նաև «Ռուսերեն խոսքի ճշտությունը և անաղարտությունը» (1911) գրքի: «Ժամանակակից գրական ռուսերենի բառարան»-ի (հ. 1–17, 1948–65) կազմակերպիչներից:

Լենինյան մրց. (1970, հետմահու):

ՉԵՌՆԻՇՈՎ Ֆեոդոսի Նիկոլաևիչ (1856–1914), ռուս երկրաբան և հնէաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1909): Աշակել է Ուրալի և Ռուսաստանի եվրոպ. մասի հս-ի պալեոզոյի շերտագրությունը: Աշխ-ներ ունի նաև դևոնի և վերին կարբոնի ժամանակաշրջանների մեջքոտանիների մասին: Չ-ի անունով կոչվել է լ-շղթա (բարձր.՝ մինչև 1572 *մ*):

ՉԵՌՆՅԱԵՎ Իլյա Իլյիչ (1893–1966), ռուս քիմիկոս-անօրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1943): Աշխ-ները վերաբերում են կոմպլեքս. միացությունների քիմիային, պլատինի ու պլատին. մետաղների ստացման արդ. եղանակներին, զտմանը և վերլուծությանը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1949, 1951, 1952):

ՉԵՌՆՅԱԽՈՎՍԿԻ Իվան Դանիլովիչ (1906–1945), խորհրդ. բանակի ռուս գեն. (1944): ԽՄ հերոս (1943, 1944): ՀՄՊ-ի ժամանակ եղել է տանկ. և հրաձգ. դիվիզիաների, տանկ. կորպուսի, բանակի հրամ.: 1944-ից՝ Արմ. և 3-րդ Բելառուս. ռազմաճակատների զորքերի գլխ. հրամ.: Մահացու վիրավորվել է Արլ-պրուս. ռազմագործողության ժամանակ:

ՉԵՌՆՅԱՎՍԿԻ Գրիգորի Մարկելովիչ (ծ. 1926), տեղեկագիտ-յան բնագավառի ռուս. գիտնական: ՌԳԱ թղթ. անդամ (1990): Աշխ-ները վերաբերում են տեղեկույթ. տիեզ. համակարգերի նախագծմանը՝ մաթ. մոդելավորման մեթոդների կիրառմամբ:

ԽՍՀՄ Պետ. (1969), Լենինյան (1976) մրց-ներ:

ՉԵՌՆՈԲԻԼ, ք. (1941-ից) Ուկրաինայում՝ Պրիպյատ գետի՝ Կիևի ջրամբար թափվելու վայրում: ԱԷԿ-ի վթարի (1986) հետևանքով ապաբնակեցվել է, բնակչությունը տարհանվել է:

ՉԵՌՆՈԲԻԼԻ ԱԷԿ, Ուկրաինայի Կիևի մարզում: Հզորությունը՝ 3000 *ՄՎտ* (3 էներգաբլոկ, յուրաքանչյուրը՝ 1000 *ՄՎտ*): 1-ին բլոկը շահագործվել է 1978-ին: 1986-ի ապրիլի 26-ին 4-րդ էներգաբլոկում տեղի ունեցած վթարի հետևանքով ճառագայթաակտիվ աղտոտման է ենթարկվել Ուկրաինայի, Բելառուսի և ՌԴ Բրյանսկի ու Կալուգայի մարզերի տարածքների նշանակալի մասը: ԱԷԿ-ից 30 *կմ* շրջագծով գոտու բնակչությունը տարհանվել է: Վթարը մեկուսացվել է 1986-ի նոյեմբ-ին: 2000-ի դեկտ. 15-ին ԱԷԿ-ի գործունեությունը դադարեցվել է:

ՉԵՌՆՈԳՈՐԱԼՈՎԿԱ, ք. ՌԴ Մոսկվայի մարզում: Բն.՝ 20,5 հզ. (2009): Ունի գիտ-յան քաղաքի կարգավիճակ (2008-ից): Չ-ում են ՌԳԱ գիտ. մի շարք հիմնարկներ (ՌԳԱ գիտ. կենտրոնը, Պինդ մարմնի ֆիզիկայի, Տես. ֆիզիկիայի, Քիմ. ֆիզիկայի հիմնախնդիրների և այլ ինստ-ներ): Առաջին անգամ հիշատակվում է 1401-ին: Չ-ի ինստ-ներում աշխատել և աշխատում են բազմաթիվ հայ գիտնականներ:

ՉԵՌՆՈԳՈՐԻԱ (Crna Gora), **Չեռնոգորիայի Հանրապետություն, Մոնտենեգրո**, պետություն Հվ. Եվրոպայում՝ Բալկանյան թ-կղզում: Սահմանակից է Բոսնիա և Հերցեգովինային, Խորվաթիային, Սերբիային և Ալբանիային: Տարածքը՝ 13,8 հզ. *կմ*^{2}, բն.՝ 621 հզ. (2014): Մայրաքաղաքը՝ *Պոդգորիցա*: Պետ. լեզուն՝ չեռնոգոր.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը (սկսուշչինա): Բաժանված է 21 վարչ. մունիցիպալիտետների: Հավատացյալների մեծ մասն ուղղափառ քրիստոնյա է: Անդամակցում է ՄԱԿ-ին, ԵԱՀԿ-ին, ԵԽ-ին, ԱՏՀԿ-ին ևն: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 11 հզ. ԱՄՆ դոլար է (2011): Արտահանում է մետաղներ (պողպատ, ալյումին), մետաղե իրեր, հանք. յուղեր, սննդամթերք ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթ, դեղորայք, քիմիկատներ, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ եվրո:

VII դ-ից Չ-ի տարածքում բնակություն են հաստատել սլավոնները (սերբեր): IX դ-ում տարածվել է քրիստոնեություն: Մինչև XI դ. կոչվել է Դուկլյա, այնուհետև՝ Զետա, XV դ-ից՝ Չ. (Զոռնիե գորի): XI դ-ում դարձել է ինքնուրույն թագավորություն՝ միավորելով բոլոր սերբ. հողերը: 1479-ին թուրքերը գրավել են երկրի դաշտավայր. շրջանը, տեղի բնակչության մի մասը փախել է Վերին Զետա: XVII դ-ում Չ-ում ձևավորվել է ավատաաստվածապետ. պետություն՝ մետրոպոլիտի գլխավորությամբ (1697-ից հաստատվել է Նեգոշների հարստության իշխանությունը): 1711-ից Չ. Ռուսաստանի կողմից մասնակցել է գրեթե բոլոր ռուս-թուրք. պատերազմներին: Պետրոս I Նեգոշի (1761–1830) և Պետրոս II Նեգոշի օրոք (1830–51) ամրապնդվել է կենտր. իշխանությունը, 1831-ին ստեղծվել է վարչ. մարմին՝ Սենատը: 1852-ին Չ-ում հռչակվել է ժառանգ. իշխանություն, 1910-ից դարձել է թագավորություն: 1877–78-ի ռուս-թուրք. պատերազմի հաղթ. ավարտից հետո ճանաչվել է Չ-ի անկախությունը: 1912–13-ին Չ. մասնակցել է Բալկանյան պատերազմներին, որի հետևանքով երկրի տարածքը մեծացել է, բնակչությունն ավելացել մոտ 2 անգամ: ԱՀՊ-ին Չ. մասնակցել է Անտանտի կողմից: 1916-ի սկզբին երկիրը գրավել են ավստրո-հունգ. զորքերը (ազատագրվել է 1918-ի աշնանը): 1918-ին ժող. մեծ սկուպշչինան հայտարարել է Նեգոշների հարստության տապալման և Չ-ի՝ Սերբերի, խորվաթների և սլովենների թագավորության մեջ (1929-ից՝ Հարավսլավիա) միավորման մասին: 1941-ին Չ. գրավել է Իտալիան և այն վերածել նահանգապետության: 1944-ին ազատագրել է Հարավսլավիայի ազատագր. բանակը: Հարավսլավիայի փլուզումից հետո Չ. և Սերբիան կազմավորել են Հարավսլավիայի Միութ. Հանրապետությունը, որը 2003-ին վերակազմավորվել է Սերբիայի և Չ-ի Համադաշն. Պետ. Միության: 2006-ից դուրս է եկել Միությունից, դարձել անկախ պետություն:

ՉԵՌՆՈԳՈՐՑԻՆԵՐ, *Չեռնոգորիայի* հիմն. բնակչությունը: Ընդհ. թիվը՝ շուրջ 273,4 հզ. (2003): Ապրում են նաև Սերբիայում (69 հզ., 2002) ևն: Խոսում են սերբա-խորվաթ-ի շտոկովյան բարբառով: Հավատացյալները հիմնականում ուղղափառ քրիստոնյա են, կան նաև կաթոլիկներ և սուննի մահմեդականներ:

ՉԵՌՆՈՄԻՐԴԻՆ Վիկտոր Ստեպանովիչ (1938–2010), ռուս պետ. և քաղ. գործիչ, 1992–98-ին՝ ՌԴ վարչապետ, 1985–89-ին՝ ԽՍՀՄ գազարդ-յան նախարար, 2001–09-ին՝ ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Ուկրաինայում, 2009-ից՝ ՌԴ նախագահի խորհրդական:

ՉԵՌՆՈՎ, Դմիտրի Կոնստանտինովիչ (1839–1921), ռուս. մետաղագետ, Ռուսաստանում մետաղագիտ-յան և պողպատի ջերմամշակման տեսության հիմնադիրը: Հայտնաբերել է պողպատի ֆազ. փոխակերպման կրիտիկ. կետերը (Չ-ի կետեր): Բացահայտել է մետաղների ջերմ. մշակման ազդեցությունը նրա կառուցվածքի և հատկությունների վրա: Ստեղծել է պողպատի ձուլակտորի բյուրեղացման տեսություն:

ՉԵՌՆՈՎ, Յուրի Լվովիչ (1935–2009), ռուս. քանդ.: ՌԽՖՍՀ ժող. նկարիչ (1979): ՌԴ Գեղարվ-ի ակադ-ի ակադ. (1997): Հեղինակ է հաստոց. կոմպոզիցիաների («Ժամանակը գնում է», 1983, ևն), դիմանկարների (դերասանուհի Ժ. Բոլոտովայի, 1986), հուշարձանների (Ալեքսանդր Նևսկու, Մեծ Նովգորոդ, 1985, ևն):

ՉԵՌՆՈՎ, Վլադիմիր Նիկոլաևիչ (ծ. 1953), ռուս երգիչ (բարիտոն): ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1989): 1983-ից՝ Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնի, 1991-ից՝ Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերայի», Լոնդոնի «Քովենտ Գարդենի», Զալցբուրգի փառատոնի մենակատար:

Մենակատարների Պ. Ի. Չայկովսկու անվ. VII միջազգ. մրցույթի 3-րդ մրց. (1982, Մոսկվա):

ՉԵՒՆՈՎԻ ՄԵՐԿԱՉՔ (Ablepharus chernovi), **Չեռնովի ծածկաչք սցինկ, Չեռնովի անկոպ սցինկ**, ***սցինկների*** ընտանիքի անկոպ սցինկներ սեռի մողես: Մարմնի երկ–յունը տարիքի հետ փոխվում է (3,6–5,2 *սմ*), պոչը մարմնից գրեթե 1,5 անգամ երկար է: Աչքերը փոքր են՝ ձուլված անշարժ կոպերով: Մնվում է մանր հոդվածոտանիներով, փափկամարմիններով: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՉԵՒՆՈՎՅԻ (մինչև 1944–ը՝ Չեռնովիցի), ք. Ուկրաինայում, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 244 հզ. (2010):

ՉԵՒՆՈՎՅԻԻ ՄԱՐԶ, վտմ Ուկրաինայում: Տարածքը՝ 8 հզ. *կմ*², բն.՝ 910 հզ. (2010): Վարչ. կենտրոնը՝ *Չեռնովցի*:

ՉԵՒՆՈՒՄԻՄԿՈ Ֆելիքս Լեոնիդովիչ (ծ. 1938), ռուս. մեխանիկոս: ՌԳԱ ակադ. (1992): Աշխ–ները վերաբերում են բարդ համակարգերի լավագույն կառավարման և դինամիկայի հարցերին:

ԽՍՀՄ (1980), ՌԴ (1998) Պետ. մրց–ներ:

ՉԵՒՆՈՒՔԵՆԿՈ Վլադիմիր Ալեքսանդրովիչ (ծ. 1936), ռուս. դիրիժոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1991): 1974–ից՝ Ս. Պետերբուրգի Մ. Ի. Գլինկայի անվ. ակադեմ. երգչախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր:

ՌԽՖՍՀ (1981), ՌԴ (1994) Պետ. մրց–ներ:

ՉԵՒՏՈԿ Բորիս Եվսեևիչ (1912–2011), ինքնաշխատ կառավարման բնագավառի ռուս. գիտնական: ՌԳԱ ակադ. (2000): Սոց. աշխ. հերոս (1961): Աշխ–ները վերաբերում են ավտոմատիկային, տիեզ. սարքերի կառավարման համակարգերին ևն:

Լենինյան (1957), ԽՍՀՄ Պետ. (1976) մրց–ներ:

ՉԵՄՄԵՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1770, 1768–74–ի ռուս–թուրք. պատերազմի ժամանակ ռուս. նավատորմը (հրամ–ծովակալներ Գ. Ա. Սպիրիդով և Ս. Կ. Գրեյգ) Չեսմենի ծովախորշում շրջապատել և ոչնչացրել է թուրք. նավատորմը: Այդ հաղթանակը ապահովել է ռուս. նավատորմի գերակայությունն Էգեյան ծովում, նպաստել Դարդանելի նեղուցի շրջափակմանը: Չ. ճ–ին է նվիրված Հ. Այվազովսկու նույնանուն կտավը (1848):

ՉԵՄՈՆԿՈՎ Յուրի Բորիսովիչ (1933–2010), ռուս վոլեյբոլիստ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1960), վ. մ. (1975): Օլիմպ. խաղերի (1964), աշխարհի (1960, 1962), ԽՍՀՄ (1954–66) բազմակի չեմպիոն: Վոլեյբոլի միջազգ. ֆեդերացիայի փոխնախագահ (1976–92, 1994–98, 2002–08):

ՉԵՍՏԵՐՏՈՆ (Chesterton) Հիլբերտ Քիտ (1874–1936), անգլիացի գրող, կրոն. մտածող, էսսեագիր: Դետեկտիվ գրկ–յան խոշորագույն ներկայացուցիչ: Հեղինակ է «Հայր Բրաունի անգիտությունը» (1911), «Հայր Բրաունի կասկածամտությունը» (1926) բանաստեղծությունների, էսսեների և պատմվածքների ժող–ների, «Նոթինգհիլցի Նապոլեոնը» (1904), «Դոն Կիխոտի վերադարձը» (1926) վեպերի, «Ուղղափառություն» (1908) էսսեների շարքի, նաև գրականագիտ., կրոն. գրքերի:

ՉԵՍՏԵՐՖԻԼԴ (Chesterfield) Ֆիլիպ Դորմեր Սթենհոփ (1694–1773), անգլիացի գրող, պետ. գործիչ: 1745–46–ին՝ Իռլանդիայի փոխարքա, 1746–48–ին՝ պետ. քարտուղար: Հեղինակ է «Նամակներ որդուս» (հրտ.՝ 1774, հայ.՝ 2014) լուսավորության ոգով դաստիարակության կանոնների և մանկավարժ. խորհուրդների հավաքածուի, «Բնավորություններ» (հրտ.՝ 1777) պատմ. փաստաթղթի:

ՉԵՍՏՆՈԿՈՎ Վլադիմիր Իվանովիչ (1904–1968), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1960): 1924–ից՝ Լենինգրադի Ա. Ս. Պուշկինի անվ. դրամատիկ. և այլ թատրոնների դերասան: Նկարահանվել է «Չորրորդ շրջադիտակը», «Ակադեմիկոս Իվան Պավլով», «Կանաչ կաթ» և այլ ֆիլմերում: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950, 1967):

ՉԵՍՏՈԽՈՎԱ (Częstochowa), ք. Լեհաստանի Սիլեզյան վոյեվոդությունում: Բն.՝ 221 հզ. (2016):

ՉԵՎԱԿԻՆՍԿԻ Սավվա Իվանովիչ (1709–1779/80), ռուս. ճարտ.: XVIII դ–ի կեսերի ռուս. բարոկկոյի առաջատարներից: Հեղինակ է Ս. Պետերբուրգի Նիկոլյան ծով. տաճարի (1753–62) և զանգակատան (1756–58) նախագծերի: 1740–50–ական թթ–ին Յարսկոյե Սելոյում մասնակցել է Մեծ (Եկատերինյան) պալատի կառուցմանը:

ՉԵՏՆԻԿՆԵՐ, Բալկանյան թ–կղզում, 1. XV–XIX դդ–ում օսմ. լծի դեմ ազգ–ազատագր. պայքարի պարտիզան. տարբեր ջոկատների (չետ) զինված մասնակիցներ: 2. XX դ–ում խմբավորումների անդամներ Հարավսլավիայում, որոնք ԵՀՊ–ի ժամանակ զինված պայքար են մղել ժող–ազատագր. ուժերի դեմ:

ՉԵՏՎԵՐԻԿՈՎ Սերգեյ Սերգեևիչ (1880–1959), ռուս. գենետիկ, էվոլյուցիոն և պոպուլացիոն գենետիկայի հիմնադիրներից: Առաջինն է պոպուլացիաներում ընտրության օրինաչափությունները կապել էվոլյուցիոն կենսընթացների դինամիկայի հետ: Աշխ–ները վերաբերում են կենդանաաշխարհագրության և միջատաբանության հարցերին: Անհիմն բռնադատվել է:

ՉԵՏՎԵՐԻՆ Ալեքսանդր Բորիսովիչ (ծ. 1953), ռուս. մոլ. կենսաբան: ՌԳԱ թղթ. անդամ (1997): Առաջարկել է մոլ. գաղութների մեթոդը, որը հնարավորություն է տալիս հայտնաբերելու և վերլուծելու նուկլեինաթթուների միայնակ մոլ–ները, կլոնավորել գենետիկ. նյութը, իրականացրել վիրուս. և ուռուցք. հիվանդությունների գերզգայուն ախտորոշումը:

ՌԳԱ Ա. Ն. Բելոզերսկու անվ. մրց. (1995):

ՉԵՐԱՋ Մինաս Գրիգորի (1852–1929), հաս., մշակութ. գործիչ, մանկավարժ, խմբ.: 1870–71–ին՝ *«Երկրագունտ»* (Կ. Պոլիս) հանդեսի խմբ.: 1880–ից Արփիար *Արփիարյանի* հետ ղեկավարել է Կ. Պոլսի «Միացյալ ընկերություն հայոց» բարեգործ. կազմ–յունը: 1886–89–ին՝ Կ. Պոլսի Կեդրոն. վարժարանի տնօրեն: 1889–1906–ին՝ *«Լ'Արմենի»* թերթի հիմնադիր–խմբ.: 1908–ից՝ Կ. Պոլսի Հայոց ազգ. ժողովի նախագահ: 1912–ին ընդգրկվել է *Պողոս Նուբարի* գլխավորած Հայոց ազգ. պատվիրակության կազմում:

Հեղինակ է «Գրական փորձեր» (1874) բանաստեղծությունների, «Արեւելեան վիպակներ» (1927) վիպակների ժող–ների, «Ազգային դաստիարակութիւն» (1876), «Թէ ինչ շահեցանք Պերլինի վեհաժողովէն» (1878), «Հայաստան եւ Իտալիա» (1879), «Կենսագրական միւսիոններ» (1929) և այլ աշխ–ների: Ֆրանս. է թարգմանել Պ. Դուրյանի, Ռ. Պատկանյանի, Խ. Գալֆայանի և ուր. գործերից:

ՉԵՐԱՊՈՒՆՋԻ, բնակավայր Հնդկաստանի հս–արլ–ում՝ Շիլոնգ սարավանդում՝ 1300 *մ* բարձր–յան վրա: Համարվում է երկրագնդի ամենաանձրևոտ վայրը. միջին տարեկան տեղումները՝ շուրջ 13 հզ. *մմ*, առլցն՝ 22,9 հզ. *մմ*:

ՉԵՐԵՄԻԽ Միխայիլ Միխայլովիչ (1890–1962), ռուս. գրաֆիկ: ՌԽՖՍՀ ժող. նկարիչ (1952): ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի անդամ (1958): «ՌՈՍՏԱ–ի պատուհաններ» և «ՏԱՍՍ–ի պատուհաններ» քաղ. պլակատների, «Կրոկոդիլ» ամսագրի ստեղծողներից: Հեղինակ է երգիծանկարների, պլակատների, նկարազարդումների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942):

ՉԵՐԵՆԿՈՎ Պավել Ալեքսեևիչ (1904–1990), ռուս. ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1970): Սոց. աշխ. հերոս (1984): Փորձարար. եղանակով հայտնաբերել է նոր օպտիկ. երևույթ (*Վավիլով–Չերենկովի ճառագայթում*): Աշխ–ները վերաբերում են տիեզ. ճառագայթներին, արագացուցիչներին:

Նոբելյան (1958, Ի. Ե. *Տամմի* և Ի. Մ. *Ֆրանկի* հետ), ԽՍՀՄ Պետ. (1946, 1952, 1977) մրց–ներ:

ՉԵՐԵՆԿՈՎ Ֆեոդոր Ֆեոդորովիչ (ծ. 1959), ռուս. ֆուտբոլիստ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1989): ԽՍՀՄ (1979, 1987, 1989), Ռուսաստանի (1993) չեմպիոն: Ռուսաստանի գավաթի հաղթող (1994): Օլիմպ. խաղերի բրոնզե մրցանակակիր (1980): ԽՍՀՄ լավագույն ֆուտբոլիստ (1983, 1989):

ՉԵՐԵՆԿՈՎԻ ՀԱՇՎԻՉ, *Վավիլով–Չերենկովի ճառագայթում* արձակող լիցքավորված մասնիկների գրանցման դետեկտոր: Օգտագործում են միջուկ. և բարձր էներգիաների մասնիկների ֆիզիկայում:

ՉԵՐԵՇՆԵՎ Վալերի Ալեքսանդրովիչ (ծ. 1944), ռուս. իմունաբան: ՌԳԱ ակադ. (1997,1999–2001–ին՝ փոխնախագահ, 1999–2008–ին՝ ՌԳԱ ՍԲ նախագահ): Փորձարար. հետազոտությունները վերաբերում են իմուն. համակարգի վրա իոնացնող ճառագայթների ազդեցությանը: Աշակել է զանգված. ճառագայթ. ախտահարման ժամանակ իմունակարգելման մեթոդներ:

ՉԵՐԵՊԱՆՈՎՆԵՐ, ռուս գյուտարարներ, գործարանատերեր Դեմիդովների ճորտերը. հայրը՝ Եֆիմ **Ալեքսեևիչ Չ.** (1774–1842), և որդին՝ **Միրոն Եֆիմովիչ Չ.** (1803–1849): Ռուսաստանում կառուցել են առաջին շոգեքարշը (1833–34) և 3,5 *կմ* երկ–յան երկթղ.:

ՉԵՐԵՊԱՇՉՈՒԿ Անատոլի Միխայլովիչ (ծ. 1940), ռուս. աստղաֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (2006): Որոշել է կրկնակի համակարգերում պեկուլյար աստղերի զանգվածները, շառավիղները, ջերմաստիճանները և էվոլյուցիոն կարգավիճակը: Հայտնաբերել է (ուր. հետ) ակտիվ գալակտիկաների միջուկներում անընդհատ սպեկտրների համեմատությամբ փոփոխ. ճառագայթման գծերի ուշացման էֆեկտը: ՌԴ Պետ. մրց. (2008):

ՉԵՐԵՊՆԻՆ Նիկոլայ Նիկոլաևիչ (1873–1945), ռուս կոմպոզիտոր, դիրիժոր: 1902–09–ին՝ «Ռուսական սիմֆոնիկ համերգների», Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնի, Ս. Դյագիլևի ռուս. թատրոնի, 1918–21–ին՝ Թիֆլիսի օպեր. թատրոնի դիրիժոր: Հեղինակ է բալետների («Արմիդայի տաղավարը», 1907, «Նարգիսն ու Էխոն», 1911, ևն), ռոմանսների, կամերգործիք., սիմֆ. և այլ գործերի: Որդին՝ **Ալեքսանդր Չ.** (1899–1977), կոմպոզիտոր, դաշնակահար: Գործել է հիմնականում արտերկրում (ԱՄՆ, Ֆրանսիա ևն): Հեղինակ է օպերաների, բալետների («Ստենկա Ռազին», 1941, ևն), կանտատների,

սիմֆոնիաների, դաշնամուրի կոնցերտների նվագախմբի հետ ևն:

ՉԵՐԿԱՍԻ, ք. (1795-ից) Ուկրաինայում, նվինգստ Կրեմենչուգի ջրամբարի ափին, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 294 հզ. (2010): Հայտնի է 1394-ից:

ՉԵՐԿԱՍԻԻ ՄԱՐԶ, վտմ Ուկրաինայում: Տարածքը՝ 20,9 հզ. *կմ*², բն.՝ 1,25 մլն (2014): Վարչ. կենտրոնը՝ *Չերկասի*:

ՉԵՐԿԱՍՈՎ, Նիկոլայ Կոնստանտինովիչ (1903–1966), ռուս դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1947): 1933-ից՝ Լենինգրադի Ա. Ս. Պուշկինի անվ. դրամայի թատրոնի դերասան (Պետրոս I՝ «Պետրոս I»՝ ըստ Ա. Ն. Տոլստոյի, Խլուդով՝ Մ. Ա. Բուլգակովի «Վազք», ևն): Նկարահանվել է «Բալթիկայի դեպուտատը», «Պետրոս I», «Ալեքսանդր Նևսկի», «Իվան Ահեղ», «Գարուն», «Դոն Կիխոտ», «Ամեն ինչ մնում է մարդկանց» և այլ ֆիլմերում:

ԽՍՀՄ Պետ. (1941, 1946, 1950, 1951-ին՝ կրկնակի), Լենինյան (1964) մրց-ներ:

ՉԵՐՄԱԿ–ԶԵՅԶԵՆԵԳ (Tschermak-Seysenegg), ավստրիացի գիտնականներ, հայր և որդի, 1. **Գուստավ Էդլեր Չ–Զ.** (1836–1927), հանքաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. անդամ (1912): Աշակել է ալյումինասիլիկատների կառուցվածքի տեսությունն իզոմորֆիզմի մասին պատկերացումների հիմքի վրա: 2. **Էրիխ Չ–Զ.** (1871–1962), ծագումնաբան: ԽՍՀՄ ԳԱ արտ. թղթ. անդամ (1932): Հ. դե Ֆրիզի և Կ. Կորենսի հետ միաժամանակ վերահայտնագործել և հաստատել է ***Մենդելի օրենքները*** (1900):

ՉԵՐՅՈՄՈՒԽԻՆ Ալեքսեյ Միխայլովիչ (1895–1958), ավիացիոն մեքենաշինության բնագավառի ռուս. գիտնական: Առաջին ուղղաթիռների կոնստրուկտոր և փորձարկող (1927–35): Ա. Ն. ***Տուպոլևի*** ԿԲ-ում ղեկավարել է ինքնաթիռների ամրության հաշվարկները (1938–ից):

ԽՍՀՄ Պետ. (1949, 1952), Լենինյան (1957) մրց-ներ:

ՉԵՐՈԿԻ, չերոկի ժողդ-ի լեզուն: Պատկանում է իրոկեզյան լեզվաընտանիքին: Օգտագործում է գրի նախօրինակ վանկ. համակարգը (արտաքնապես նման է լատինականին)՝ Սիկվայայի գիրը:

ՉԵՐՉԵՆ, գետ Չինաստանի արմ-ում: Երկ.՝ 725 *կմ*, ջրի միջին ծախսը լեռներից հարթավայր անցնելիս՝ 20 *մ*³/*վ*: Հոսում է Տակլա-Մական անապատի հվ-արլ. ծայրամասով և թափվում է Կարաբուրանկել լիճը: Սնում է համանուն օազիսը:

ՉԵՐՉԻԼ, (Churchill) Ուինսթոն Լեոնարդ Սպենսեր (1874–1965), Մեծ Բրիտանիայի պետ. գործիչ: Պահպանող. կուս-յան ղեկ-ր: 1940–45 և 1951–55-ին՝ վարչապետ: 1940–45 և 1951–52-ին՝ պաշտպ-յան նախարար: ԵՀՊ-ի ժամանակ առաջարկել է ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի հետ ստեղծել հակահիտլեր. դաշինք, պատերազմի ավարտից հետո՝ «սառը պատերազմի» նախաձեռնողներից: Նորելյան մրց. (գրկ., 1953):

ՉԵՐՉԻԼ, գետ Կանադայի կենտր. մասում: Երկ.՝ շուրջ 1400 *կմ*, ավազանը՝ 282 հզ. *կմ*², ջրի միջին ծախսը՝ 1200 *մ*³/*վ*: Թափվում է Հուդզոնի ծոց: Գետաբերանում համանուն նվինգստ-ն է:

ՉԵՐՈՎԻ Իվան Դեմիդովիչ (1845–1892), Արլ. Սիբիրի լեհ հետազոտող: Լեհ. ապստամբությանը մասնակցելու համար աքսորվել է Սիբիր: Կազմել է Բայկալի մերձափնյակի առաջին երկրբ. քարտեզը: Առաջարկել է ներքին Ասիայի առաջին տեկտ. սխեմաներից մեկը (1886), ռելիեֆի էվոլյուցիոն զարգացման գաղափարը (1878): Չ-ի պատվին կոչվել է լ–շղթա:

ՉԵՐՏԿՈՎ, Վլադիմիր Գրիգորևիչ (1854–1936), ռուս հաս. գործիչ, հրտ.: «Տոլստոյականություն» հաս. շարժման առաջնորդը: Ս. Պետերբուրգում 1884-ին հիմնադրել է «Պոսրեդնիկ» հրտչ-յունը, 1901–05-ին լույս է ընծայել «Սվոբոդնոե սլովո» թերթը, 1898–1902-ին՝ «Լիստկի «Սվոբոդնոգո սլովա»» ժող-ը (երկուսն էլ՝ ռուս.): Մասնակցել է դուխոբորների՝ Կանադայում վերաբնակեցմանը: 1928-ից՝ Լ. Ն. Տոլստոյի ԵԼԺ (հ. 1–90) 1–72-րդ հատորների գլխ. խմբ.:

ՉԵՐՈՒՏԻ (Ceruti) Ջակոմո (1698–1767), իտալացի գեղանկարիչ: Ջուսպ գունեղանգով դիմանկարներում և աղքատների կյանքը պատկերող ժանր. տեսարաններում ստեղծել է բնութագր. կերպարներ («Երեկոն հրապարակում», 1730-ական թթ-ի սկիզբ, «Երկու ցնցոտիավոր», 1730-ական թթ-ի սկիզբ):

ՉԵՐՔԵԶՅԱՆ Լևոն Վաղինակի (1927–2000), ճարտ.: ՀՀ վաստ. ճարտ. (1981): Համահեղինակ է Աբովյան ք-ի վարչահաս. կենտրոնի (1968–78), Ալավերդու Սանահինի սարահարթի (1959–62) կառուցապատումների, Դիլիջանում (1964), Գագրայում (1964), Սևանի ափին (1965), Արզնիում (1967), Երևանում (1970)՝ առողջարանների ու պանսիոնատների, Երևանի «Զվարթնոց» օդանավակայանի (1981, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1985) նախագծերի: «Տարվա լավագույն կառույց» համամիութ. ստուգատեսի դափնեկիր և ոսկե մեդալ (1982):

ՉԵՐՔԵԶՆԵՐ (ինքնանվանումը՝ ադըղե), ադղղեական ժողդ: Ապրում են ՌԴ Կարաչաևո-Չերքեզիայի Հանրապետությունում (56,5 հզ.), Թուրքիայում և Առաջավոր Ասիայի որոշ երկրներում: Ընդհ. թիվը՝ 80,0 հզ. (2010): Լեզուն՝ կարաղդինաչերքեզ.: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են:

ՉԵՐՔԵՍԿ (մինչև 1939-ը՝ Բատալփաշինսկ, 1936–37-ին՝ Սուլիմով), ՌԴ Կարաչաևո-Չերքեզիայի Հանրապետության մայրաքաղաքը՝ Կուբան գետի ափին: Բն.՝ 116 հզ. (2009): Երկթղ. կայարան է:

ՉԵՔԻՉՅԱՆ Հովհաննես Հարությունի (ծ. 1928), խմբավար, դիրիժոր, կոմպոզիտոր: ՀՀ (1967), ԽՍՀՄ (1978) ժող. արտիստ: ՀՀ Ազգ. հերոս (2017): ԵՊԿ պրոֆ. (1982): «Չեքիջյան» հայկ. երգչախումբ հիմնադիրը (1957): 1947-ին՝ Ստամբուլում սիմֆ. նվագախմբի ղեկ., 1958–61-ին՝ Ստամբուլի օպեր. թատրոնի երաժշտ. ղեկ. և պետ. երգչախմբի գլխ. դիրիժոր, 1961-ից՝ Հայաստանի պետ. երգչախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր, 1982–87-ին՝ ԵՕԲԹ տնօրեն և գեղ. ղեկ.: Ղեկավարել է նաև աշխարհում ճանաչված բազմաթիվ սիմֆ. նվագախմբեր: Հեղինակ է վոկալ-սիմֆ. երկերի:

ՀԽՍՀ (1970), ԽՍՀՄ (1975) Պետ. մրց-ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (1996), «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2010), ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» (1999), ՄՏԿԿ «Մեսրոպ Մաշտոց» (1992), Համաշխ. հայկ. կոնգրեսի «Ոսկե խաչ» (2009), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» I աստիճանի (2017) շքանշաններ: Էկոլոգ. միջազգ. (2001), Մոնրեալի տեղեկատվ. (2008), Բնության և հաս-յան (2009) միջազգ. ակադ-ների անդամ:

ՉԹՉՅԱՆ Ավետիք Մկրտչի (ծ. 1962), գեղանկարիչ: Հեղինակ է «Չկներով նատյուրմորտ» (1992), «Ծաղիկներով նատյուրմորտ» (2000), «Նռներով նատյուրմորտ» (2002), նաև «Խաչելություն» (1992), «Ադամ-Եվա» (1995), «Երաժշտություն» (2003) և այլ գործերի, որոնք աչքի են ընկնում լակոնիկ և խորհրդանշ. արտահայտչամիջոցներով:

ՉԹՉՅԱՆ Գեղունի Հովհաննեսի (ծ. 1929), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1980), ժող. արտիստ (2011): Պրոֆ. (1990): Հեղինակ է «Բալետային սյուիտի» (1954, սիմֆ. նվագախմբի համար), «Յոթ մանկական սիմֆոնիկ պատկերների» (1964), «Բարի լույս» (1967) նախերգանքի, «Հայաստան» (1988) կամեր. սիմֆոնիայի, կոնցերտների՝ ձայնի (1963), ջութակի (1976), դաշնամուրի (1981) և նվագախմբի համար, «Հայկական խորաքանդակներ» (1972) դաշնամուր. շարքի, կանտատների, «Անհայտ զինվորը» (1975) պոեմ-ռեքվիեմի, խմբերգերի, սոնատների, ռոմանսների, վոկալ շարքերի («Խոնհարվել է ծառը», 1990, «Սուրբ հոգի», 1995, ևն), մանկ. երգերի, պիեսների և այլ գործերի:

Համամիութ. մրցույթի 1-ին մրց. (1968, Մոսկվա), ՀՀ «Մովսես Խորենացի», ՄՆ ոսկե (երկուսն էլ՝ 2009) մեդալներ:

ՉԺԱՆ ՀԵՆ (78–139), չին աստղագետ: Պատրաստել է մի քանի գործիքներ (պտտվող աստղ. գլոբուս, երկրաշարժի էպիկենտրոնը ցույց տվող սարք ևն): Նկարագրել է 2500 աստղեր՝ խմբավորելով դրանք 124 համաստեղություններում:

ՉԺԱՆ ՏՅԱՆԻ (1906–1985), չին գրող: Հեղինակ է «Մեկ տարի» (1933), «Քաղաքում» (1935) վեպերի, «Գրություններ ոգիների աշխարհից» (1931) սատիր. վիպակի, նաև պատմվածքների, «Թանկարժեք դդումի գաղտնիքը» (1957) և այլ հեքիաթների: Հայ. հրատարակվել է «Լին Մեծն ու Լին Փոքրը» (1961) պատմվածք-հեքիաթը:

ՉԺԱՆ ՅԱՆ, մ. թ. ա. II դ–ի չին պետ. գործիչ և գիտնական: Հեղինակ է «Թվաբանություն ինը գլուխներով» դաս. տրակտատի, որտեղ շարադրել է իր ժամանակի Չինաստանում հայտնի մաթ. գիտելիքները:

ՉԺԱՆ ՅՅԱՆ (մ. թ. ա. 164–114), չին դիվանագետ: «Մետաքսի ճանապարհով» Չինաստանից անցել է Միջին Ասիա: Այդ տարածքներում բնակվող ժողդ-ներին նկարագրել է «Շիցզի» տեքստի «Պատմություն Դավանի մասին» գլխում:

ՉԺԱՆՅՋՅԱԿՈՒՒ, **Կալգան**, ք. Չինաստանի Հեբեյ պրովինցիայում: Բն.՝ 858 հզ. (արվարձաններով՝ ավելի քան 1,3 մլն, 2010): Երկաթաքարի (Լունյանի ավազան) և քարածխի արդյունահանման, խաղողի գինու արտադր-յան կենտրոն է:

ՉԺԱՆՅՋՅԱՆ, ք. Չինաստանի Հեբեյ պրովինցիայում: Բն.՝ 858 հզ. (արվարձաններով՝ ավելի քան 1,3 մլն, 2010): Երկաթաքարի (Լունյանի ավազան) և քարածխի արդյունահանման, խաղողի գինու արտադր-յան կենտրոն է:

ՉԺԱՆՅՋՅԱՆ, ք. Չինաստանի Գուանդուն պրովինցիայում՝ Լեյչժու թ–կղզում՝ Հարավչին. ծովի ափին: Բն.՝ 730 հզ. (արվարձաններով՝ 1,7 մլն, 2010): Ունի խոշոր ծով. նվինգստ: Ռազմածով. հենակետ է:

ՉԺԵՆ ՀԵ (1371–1435), չին ճանապարհորդ, նավատորմի ղեկ., դիվանագետ: 1405–33-ին գլխավորել է 7 ծով. արշավախմբեր՝ Հնդկաչինը, Սումատրան, Ճավան, Արլ. Աֆրիկան և Հնդ. օվկ-ի մի շարք կղզիներ հետազոտելու նպատակով:

ՉԺԵՆ ՉԵՆԳՈՒՆ (եվրոպ. գրկ-յան մեջ՝ Կոկսինգա, 1624–1662), չին զորավար: 1646-ից մարտնչել է մանջուր. Ցին հարստության դեմ: 1661–62-ին Թայվան կղզուց վտարել է հոլանդացի գաղութարարներին:

ՉԺԵՆՉԺՈՒՒ, ք. Կենտր. Չինաստանում, Հենան նհնգ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝

ավելի քան 2 մլն (արվարձաններով՝ 2,2 մլն, 2010): Տրանսպորտ. հանգույց է, ունի օդանավակայան, մետրոպոլիտեն: Կան կենսատեխնոլոգիայի բնագավառում ԳՀՓԿՄ իրականացնող ընկ-ներ:

ՉԺԵՆՉՅՅԱՆ, **Դանտու**, ք. Չինաստանի արլ. մասում՝ Յանցզիի և Մեծ ջրանցքի ափին: Բն.՝ 635 հզ. (արվարձաններով՝ ավելի քան 1 մլն, 2010):

ՉԺԵՅՉՅԱՆ, պրովինցիա Արլ. Չինաստանում: Տարածքը՝ 106 հզ. *կմ*^{2}, բն.՝ 54,4 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ *Հանչժոու*:

ՉԺՈՈՒ ԳՈՒԱՆՉԺԱՈ (ծ. 1929), չին ֆիզիկոս: ՌԳԱ արտ. անդամ (1988): ՉԺՀ ԳԱ նախագահ (1987–97): Աշխ-ները վերաբերում են տես. և բարձր էներգիաների ֆիզիկային: Չ. Գ–ի անունով կոչվել է աստղակերպ (1996): ՉԺՀ Պետ. մրց. (1982):

ՉԺՈՈՒ ԷՆԼԱՅ (1898–1976), չին պետ. և քաղ. գործիչ: 1949–54–ին՝ ՉԺՀ Պետ. վարչ. խորհրդի նախագահ, 1949–58–ին՝ ԱԳ նախարար, 1954–ից՝ նախագահ, 1956–66 և 1973–ից՝ Չինաստանի կոմկուսի ԿԿ նախագահի տեղակալ:

ՉԺՈՈՒ ԼԻԲՈ (1908–1979), չին գրող: Հեղինակ է «Փոթորիկ» (1948), «Պողպատե հեղեղ» (1955), «Մեծ փոփոխություններ լեռնային գյուղում» (1958–60) վեպերի, նաև պատմվածքների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1951, 1952):

ՉԺՈՒ ԴԵ (1886–1976), չին ռազմ., պետ. և քաղ. գործիչ: Մարշալ (1955–65): 1931–ից՝ Չինաստանի կարմիր բանակի գլխ., 1931–ից՝ 8–րդ բանակի հրամ., 1945–54–ին՝ Չինաստանի ժողովրդապատգար. բանակի գլխ. հրամ., 1934–ից՝ Չինաստանի կոմկուսի ԿԿ քաղբյուրոյի անդամ, 1945–56–ին՝ Չինաստանի կոմկուսի ԿԿ քարտուղար, 1954–59–ին՝ ՉԺՀ նախագահի տեղակալ, 1956–66–ին՝ Չինաստանի կոմկուսի ԿԿ նախագահի տեղակալ:

ՉԺՈՒ ՅՈՒԱՆՉԺԱՆ (1328–1398), Չինաստանի կայսր՝ 1368–ից: Մին հարստության հիմնադիրը: Աղքատ գյուղաց. ընտանիքից: 1350–60–ական թթ–ին՝ մոնղ. Յուան հարստության դեմ ծավալված ապստամբության գլխ. կազմակերպիչներից:

ՉԺՈՒ ՇԻՅԶԵ (մոտ 1260–մոտ 1320), չին մաթեմատիկոս: «Չորս տարրերի հասպիսե հայելի» («Սի յուան յույ ցզյան») աշխ-ը պարունակում է 4 անհայտով ոչ գծային հավասարումների լուծումներ:

ՉԺՈՒ ՉԵՆ (ծ. 1976), չին շախմատիստուհի: Միջազգ. գրոսմայստեր (2001): Շախմատի աշխարհի չեմպիոնուհի (2001–04): Չինաստանի հավաքականի կազմում շախմատի օլիմպիադայի հաղթող (2000, 2002):

ՉԺՈՒ ՍԻ (Չժու–ցզի, 1130–1200), չին փիլ. և պատմաբան: Նորկոնֆուցիականության հիմնադիրներից:

ՉԺՈՒԱՆ (ինքնանվանումը՝ բունուն), ժողղ Չինաստանի հվ–արմ–ում (հիմնականում՝ Գունսի–Չժուանյան ինքնավար շրջանում և Յունան պրովինցիայում): Ընդհ. թիվը՝ 16,2 մլն (2000): Լեզուն՝ չժուան.: Հավատացյալներն ավանդ. հավատալիքների և դաոսականության հետևորդ են:

ՉԺՈՒԱՆ–ՅՋԻ (մ. թ. ա. մոտ 369–286), չին փիլ.: Դաոսիզմի հիմնադիրներից: «Չժուան–ցզի» աշխ-ը գրել է առակների, նորավեպերի ու երկխոսությունների ձևով և ուղղված է *կոնֆուցիոսի* և Մաոցզիի ուսմունքների դեմ: Բնությունը, որտեղ մարմնավորվում է դաոն, հակադրվում է մարդու ստեղծած բռնապետությանը, մշակույթին, բարոյականությանը:

ՉԺՈՒԳԵ ԼՅԱՆ (181–234), Սանգոյի դաբաշրջանի չին զորավար: Նրա ռազմ. սխրանքները փառաբանվել են «Եռապետություն» վեպում (XIV դ.):

ՉԺՈՒԿՆ ԱՐԹՈՒՐ Ռայմոնդ (1918–2008), Գայանայի 1–ին նախագահը՝ 1970–80–ին՝ հանրապետության հռչակումից հետո: Պետության փաստացի ղեկ–ը, սակայն, ֆորրս Բյոռնեմս էր:

ՉԺՈՒՉԺՈՈՒ, ք. Չինաստանի Հունան պրովինցիայում՝ Սյանցզյան գետի ափին: Բն.՝ 704 հզ. (2010): Տրանսպորտ. խոշոր հանգույց է: Կան բարձր տեխնոլոգ. արդյան ձեռն–ներ:

ՉԻԱՆԳՄԱՅ, **Չիենգմայ**, ք. Թաիլանդի հս–ում՝ Պինգ գետի ափին: Բն.՝ 186,7 հզ. (2010):

ՉԻԱՆՈ (Ciano) Գալեացցո (1903–1944), Իտալիայի ԱԳ նախարար՝ 1936–43–ին: 1943–ին մասնակցել է Բ. Մուսոլինիի դեմ կազմակերպված դավադրությանը: Ֆաշիստները մահապատժի են ենթարկել:

ՉԻԲՉԱ, հնդկացի ժողղ–ների (կունա, գուահիմներ, մուիսկներ, պաստոներ ևն) խումբ՝ Հվ. և Կենտր. Ամերիկայում: Ընդհ. թիվը՝ 635 հզ. (1992): Խոսում են չիբչանյան լեզուներով: Հավատացյալները հիմնականում կաթոլիկ են:

ՉԻԲՉԱՆՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, ամերիկ. հնդկաց. լեզվախումբ և նույն խմբի համանուն լեզուն: Տարածված է Հվ. Ամերիկայի հս. (Կոլումբիա, Էկվադոր) և Կենտր. Ամերիկայի հվ. շրջաններում:

ՉԻԲՈՒԲԴԱՆԻՉԵ Մայա Գրիգորի (ծ. 1961), վրացի շախմատիստուհի: Կանանց (1977) և տղամարդկանց (1984) շախմատի միջազգ. գրոսմայստեր: ԽՍՀՄ ս. վ. վ. (1978): Աշխարհի (1978–91), ԽՍՀՄ (1977) չեմպիոնուհի:

Շախմատի «Օսկար» մրց. (1984–87):

ՉԻԳՈՐԻՆ Միխայիլ Իվանովիչ (1850–1908), ռուս. շախմատիստ: Ռուս. շախմատի դպրոցի հիմնադիր: Շախմատի չեմպիոնի կոչման հավակնորդ (1889–92): Ռուսաստանի չեմպիոն (1899–1906): Անցկացվում են Չ–ի հիշատակի մրցաշարեր:

ՉԻԳՐԻՆՈՎ, Իվան Գավրիլովիչ (1934–1996), բելոռուս գրող: ԲԽՍՀ ժող. գրող (1994): Հեղինակ է «Լորի լացը» (1972, հայ.՝ 1979), «Արյան արդարացումը» (1977), «Մերոնք և օտարները» (1982) եռերգության, նաև պատմվածքների, պիեսների: ԲԽՍՀ Պետ. մրց. (1974):

ՉԻԶՄԱՋԵՎ, Յուրի Ալեքսանդրովիչ (ծ. 1931), ռուս. կենսաֆիզիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1987): Ուսումնասիրել է թաղանթ. փոխադրման, գրգռողականության երևույթների և էլ. դաշտի ազդեցությունը բջիջների ու նրանց թաղանթների վրա:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1986):

ՉԻԹՉՅԱՆ Աշոտ Հովհաննեսի (1903–1972), հողագետ: Գղտ. գիտ. թեկնածու: ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ: Աշխ-ները վերաբերում են ՀՀ հող. ծածկույթի ուսումնասիրությանը, կազմել է առանձին տարածաշրջանների խոշորամասշտաբ հող. քարտեզներ, մշակել է Արարատյան դաշտի աղակալած հողերի բարելավման միջոցառումներ: ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան:

ՉԻԹՈՒՆԻ (Չիթչյան, Չթչյան) Տիգրան Հարությունի (1881–1960), բանահավաք–բանասեր, հրտ., խմբ.: 1910–ին Կ. Պոլսում հիմնադրել է «Հայագիտում» հրտչ–յունը: 1940–ական թթ–ից՝ Փարիզում: Հեղինակ է «Սասմանց տուն» (1910), «Արեւելեան խաղաշարիի» (հ. 1–2, 1919), «Յուշիկք Հայաստանի» (1919), «Բ՚իւր ակ... հազմր ակ...» (1913), «Մայրենի աշխարհ» (գիրք 1, 1913) ազգագր–բանահյուս. աշխ-ների, «Համբարձման «վիճակ»» (1919) ժող–ի: Փոխադրել և հրատարակել է «Լէյլի եւ Մէջրում» (1911) սիրերգը, գրառել «Սասնա ծռեր»–ի 4 տարբերակ («Սասունական» վերնագրով, հ. 1, 1942): Չ–ուց Վանի ժող. երգեր է գրառել Կոմիտասը: Իզմիրյան մրց. (1907):

ՉԻԺԵՎՍԿԻ Ալեքսանդր Լեոնիդովիչ (1897–1964), ռուս. կենսաֆիզիկոս, արևակենսբ–յան հիմնադիրը, տիեզ. կենսբ–յան ռահվիրաներից: Հաստատել է Արեգակի ակտիվության փուլերի և կենսոլորտում մի շարք երևույթների միջև կապը: Աշխ-ները նվիրված են կենդանի օրգանիզմների վրա օդում առկա իոնների ազդեցությանը, աերոիոնացման գործնական կիրառությանը (առաջարկել է, այսպես կոչված, Չ–ի ջահը): 1942–58–ին անհիմն բռնադատվել է (1950–ից՝ աքսորավայրում):

ՉԻԺԵՎՍԿԻ Նիկոլայ Պրոկոպևիչ (1873–1952), ռուս. մետաղագետ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939): Առաջարկել է ածխի կոքսացման նոր տեխնոլոգիա, մշակել առաջին ռուս. կոքսային վառարանների նախագծման տես. հիմքերը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943):

ՉԻԺԻԿ Լեոնիդ Արկադևիչ (ծ. 1947), ռուս ջազ. դաշնակահար, կոմպոզիտոր: ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1984): 1972–ից՝ «Մոսկամերգի» մենակատար: 1991–ից՝ Գերմանիայում: Հեղինակ է «Գիշերային քաղաքը» (1979) բալետի, «Պոեմների»՝ դաշնամուրի և նվագախմբի համար (1982), ջազ. կոմպոզիցիաների և այլ գործերի:

ՉԻԺԻԿՈՎ, Դավիդ Միխայլովիչ (1895–1974), ռուս. մետաղագործ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1939): Աշխ-ները վերաբերում են գունավոր և հազվագյուտ մետաղների ստացման տեսությանը և տեխնոլոգիային: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942, 1951):

ՉԻԺՈՎ, Ալեքսանդր Ռուդոլֆովիչ (ծ. 1964), ռուս. շաշիստ (100–վանդականոց շաշկի): Միջազգ. գրոսմայստեր (1988): Աշխարհի (1988–93, 1995, 1996, 2000, 2005), ԽՍՀՄ (1988, 1990) չեմպիոն:

ՉԻԼԻ (Chile), **Չիլիի Հանրապետություն** (República de Chile), պետություն Հվ. Ամերիկայում: Սահմանակից է Պերուին, Բոլիվիային և Արգենտինային: Տարածքը՝ 757 հզ. *կմ*^{2}, բն.՝ 17,2 մլն (2017): Մայրաքաղաքը՝ ***Սանտյագո***: Պետ. լեզուն՝ իսպ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը: Բաժանված է 15 վարչ. մարզերի: Հավատացյալները հիմնականում կաթոլիկ են: Անդամակցում է ՄԱԿ–ին, Մերկոսուրին, ԱտտՀԿ–ին ևն: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 16,3 հզ. ԱՄՆ դոլար է (2011): Արտահանում է պղինձ, մրգեր, ձուկ, թուղթ, գինիներ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթ ու գազ, դեղորայք, քիմիկատներ, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ չիլ. պեսո:

Հնում Չ–ի տարածքում բնակվել են հնդկացիներ (արաուկաններ, այմարաներ, չոներ, չանգոներ ևն): XV դ–ում ինկերը Չ–ի տարածքի հս–ի ցեղերին մղել են հվ: XVI դ–ի 30–ական թթ–ին Չ–ի տարածք են ներխուժել իսպ. նվաճողները՝ Դ. դե Ալմագրոյի և Պ. դե Վալդիվիայի

գլխավորությամբ, և XVI դ–ի կեսին այն ընդգրկել Պերու փոխարքայության մեջ, իսկ 1778–ին առանձնացրել իրրև գեն–կապիտանություն: XVI դ–ի կեսին հիմնադրվել են Սանտյագո (1541), Կոնսեպսիոն (1550), Վալդիվիա (1552) ք–ները: 1811–ին ստեղծվել է ազգ. կոնգրես, սակայն Իսպանիայի կողմնակից տարրերի մեծամասնության պատճառով Խ. Մ. Կառերան արձակել է կոնգրեսը, իշխանությունը վերցրել իր ձեռքը: 1817–ին Չ–ի հայրենասիր. ուժերը հրամ. Պ. Օ'Հիգգինսի գլխավորությամբ և արգենտինացի գեն. Խ. Սան Մարտինի բանակի օգնությամբ Չակաբուկոյի ճակատամարտում պարտության են մատնել իսպանացիներին և մտել Սանտյագո, Օ'Հիգգինսը դարձել է Չ–ի գերագույն կառավարիչ: 1818–ի փետր. 12–ին հռչակվել է Չ–ի անկախությունը, ընդունվել է սահմանադրություն, որն ամրապնդել է կառավարման հանրապետ. վարչակարգը, գործադիր իշխանությունը կենտրոնացել է Օ'Հիգգինսի (հրաժարական է տվել 1822–ին) ձեռքին: 1879–83–ին Մեծ Բրիտանիայի աջակցությամբ Չ. պատերազմել է Պերուի և Բոլիվիայի դեմ, որի արդյունքում Չ–ին են անցել Պերուի հվ–ի Տարապակա մարզը, Բոլիվիայի տարածքի մի մասը (Բոլիվիան զրկվել է ծով դուրս գալու հնարավորությունից): 1886–ին իշխանության գլուխ անցած Խ. Մ. Բալմասեդան 1891–ին հրաժարական է տվել: ԱՀՊ–ի ժամանակ Չ. չեզոքություն է պահպանել: 1945–ին պատերազմ է հայտարարել Գերմանիային, ապրիլին՝ Ճապոնիային, սակայն ռազմ. գործողությունների չի մասնակցել: 1947–58–ին հաստատվել է բռնակալ. վարչակարգ: 1970–ին նախագահ է ընտրվել սոցիալիստ Ս. Այեենդե Գոսենսը: Երկրում ազգայնացվել են գործարաններն ու բանկերը, իրականացվել գղտ. բարեփոխումներ ևն: 1973–ին ռազմ. հեղաշրջմամբ իշխանության է եկել գեն. Ա. Պինոչետը: Սահմանադրության գործողությունը կասեցվել է, իրականացվել է անդրազգայնացման քաղ–յուն, հետապնդվել են ընդդիմադիր գործիչները (սպանվել է ավելի քան 30 հզ. մարդ): 1989–ին անցկացվել են ժողովրդավար. ընտրություններ. Պինոչետը հեռացվել է իշխանությունից, կազմվել է քաղաքաց. կառ–յուն:

Չ–ում հայ համայնքը ձևավորվել է 1930–ական թթ–ին՝ հիմնականում Սանտյագոյում: 1950–ական թթ–ին համայնքը համալրվել է Թուրքիայից, Պաղեստինից, ինչպես նաև Մերձ. ու Միջին Արևելքի երկրներից եկած հայերով: Ներկայում Չ–ում ապրում է շուրջ 1,5 հզ. հայ, հիմնականում՝ Սանտյագո, Օսոռնո, Սան Բեռնարդո, Պուենտե Ալտս և այլ ք–ներում: Ազգ. կյանքը ղեկավարում է Հայ գաղութ. վարչությունը, որին կից գործում է Տիկնանց միությունը, Սանտյագոյում՝ Հայի տունը՝ կիրակնօրյա դպրոցով:

ՉԻԼԻԱԿԱՆ ԿՂԶԵԽՈՒՄԲ, Չիլիի հվ–արմ. ափերի մոտ՝ Խաղաղ օվկ–ում: Խոշոր կղզիները՝ Չիլոե, Ուելինգտոն, Սանտա Ինես ևն: Բարձր.՝ մինչև 1341 մ: Ափերը կտրտված են ֆյորդներով: Հաճախակի են երկրաշարժերը: Գլխ. ք–նվինգստ–ը՝ Անկուդ (Չիլոե կղզում):

ՉԻԼԻԱՅԻՆԵՐ, ժողդ, Չիլիի հիմն. բնակչությունը: Ընդհ. թիվը՝ 14,4 մլն (2002): Չ–ի 30–60 %–ը Եվրոպայից գաղթածների (իսպանացիներ, իտալացիներ, գերմանացիներ, իռլանդացիներ ևն) սերունդներն են, 44–65 %–ը՝ մետիսներ: Լեզուն՝ իսպ.: Հավատացյալները հիմնականում կաթոլիկ են:

ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ Աղասի Հակոբի (1909–1985), կենսաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1970), պրոֆ. (1972): 1952–57–ին՝ ՀԽՍՀ գղտ–յան նախարար, 1957–73–ին՝ ԳԱ կենդբ–յան ինստ–ի տնօրեն: Աշխ–ները վերաբերում են գղտ. և վայրի կենդանիների էկոլոգիային և հեռավոր տրամախաչման հարցերին:

ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ Աշոտ Աղասու (ծ. 1949), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1991): Ազգ. գիտ. լաբորատորիայի տնօրեն (2008): Աշխ–ները վերաբերում են տիեզ. ճառագայթների ծագման ու արագացման շարժընթացներին, Արեգակի ֆիզիկային, նեյրոն. ցանցերի և բազիս. վիճակագր. մոդելներին ու գենոմների վերլուծությանը: ՀՀ նախագահի մրց. (2012):

ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ Արմեն Արշակի (1910–1986), գեղանկարիչ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1960): 1931–37–ին՝ Հայաստանի Առաջին պետթատրոնի նկարիչ, ապա՝ գլխ. նկարիչ (Ֆ. Շիլլերի «Սեր և խարդավանք», 1935, Շիրվանզադեի «Պատվի համար», 1939), 1937–ին և 1966–ից՝ ԵՌԹ գլխ. նկարիչ (Ա. Ն. Արբուզովի «Գիշերային խոստովանություն», 1967, Բ. Նուշիչի «Տիկին մինիստրուհին», 1981, ևն): Հեղինակ է «Ընթերցող աղջիկը» (1946), «Վահրամ Փափազյան» (1951), «Աշտարակի հին կամուրջը» (1960) և այլ գեղանկարչ. գործերի: 1962–67–ին՝ ՀԱՊ տնօրեն:

ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ Գևորգ (Ջորջ) Վարոսի (ծ. 1929), երկրաբան: Երկրբ. գիտ. դ–ր (1954), պրոֆ. (1956): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (1998): ՌԲՆԳԱ փոխնախագահ (2000): ԱՄՆ ՌԾՈՒ գեն.: Աշխ–ները վերաբերում են նավթի երկրբ–յան, արդյունահանման և նստվածքաբանության խնդիրներին: Մեծ ներդրում ունի Իրանի (Խուզիստան նինգ–ում նավթահանքերից մեկը ի պատիվ նրա կոչել են «Չիլինգար»), Կենտր. Ամերիկայի, Արլ. Ասիայի երկրների նավթի հանքավայրերի հայտնաբերման, ուսումնասիրման և նավթարդ–յան գործում: 1980 և 1998–ին եղել է Հայաստանում:

ՌԲՆԳԱ Մ. Վ. Լոմոնոսովի անվ. մեդալ:

ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ Լևոն Արտեմի (1928–2009), հիդրոտեխնիկ: Տեխ. գիտ. դ–ր (1997): Աշխ–ները վերաբերում են ջր. պաշարների բնութագրման, կառավարման, պահպանման հարցերին, հանրապետության ջր. (մասնավորապես՝ Սևանա լճի) հիմնահարցերին, ջրատնտ. հետազոտություններում մաթ. մոդելավորման մեթոդների ներդրմանը: ՌԳԱ Գ. Մ. Կրժիժանովսկու անվ. մրց. (1962):

ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ Հմայակ Մկրտչի (ծ. 1924), նյարդաձևաբան, հյուսվածաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1969), պրոֆ. (1988): 1980–87–ին՝ Հայկ. անասնաբուծության ԳՀԻ տնօրեն: 1996–ից՝ ԱՄՆ–ում: Աշխ–ները վերաբերում են մարդու և կենդանիների անոթ. ու նյարդ. համակարգերի ձևաբան. և բջջաքիմ. առանձնահատկություններին, հետազոտման նոր մեթոդների մշակմանը, Նյու Յորքի ԳԱ անդամ (1994): Ուղեղի ուսումնասիրության միջազգ. կազմ–յան անդամ (1983–ից):

ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ Հռիփսիմե Հակոբի (1919–1994), նյարդաբան, կուրորտաբան, ֆիզիոթերապևտ: Բժշկ. գիտ. դ–ր (1969): ՀՄՊ–ի տարիներին՝ Երևանի էվակոհոսպիտալների գանգագլխուղեղ. վնասվածքների բաժանմունքի վարիչ: Աշխ–ները վերաբերում են նյարդ. հիվանդությունների կանխարգելման և ախտածնային բուժման մեթոդների մշակմանը:

ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ Յուրի Սերգեյի (1938–2016), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1985), պրոֆ. (1986): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2009): ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադ. քարտուղար (2006–16): Աշխ–ները վերաբերում են լազեր. ֆիզիկային, ոչ գծային օպտիկային և սպեկտրոսկոպիային, վիճակագր. օպտիկային և ռադիոֆիզիկային, մանրաթել. օպտիկային և օպտոէլեկտրոնիկային: Մշակել է կոհերենտ քառաֆոտոն. սպեկտրադիտման մեթոդ, հետազոտել ոչ ստացիոնար և ստոխաստիկ ալիք. շարժընթացները, անկայունությունները, լազեր. ճառագայթմամբ մակածված փուլ. անցումները ևն:

ԵՊՀ ոսկե մեդալ (2008):

ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ Նիկոլայ Վաղինակի (ծ. 1947), ճարտարագետ, քիմիկոս–տեխնոլոգ: Տեխ. գիտ. դ–ր (1998), պրոֆ. (2000): Աշխ–ները վերաբերում են կապակցող (ցեմենտ ևն) ու բաղադրյալ շին. նյութերի արտադր–յան տեխնոլոգիային:

ԵՊՃՇՀ «Փառք շինարարի» հուշամեդալ (2012):

ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ Սարիբեկ Սողոմոնի (1925–1996), ԽՄ հերոս: Հերոսի կոչման արժանացել է 1945–ի ապրիլին՝ Բեռլինի ամրոցներից մեկը 5 հոգով գրավելու և նրա վրա անձամբ կարմիր դրոշ ամրացնելու համար:

ԽՍՀՄ Կարմիր աստղի, Փառքի 3–րդ աստիճանի շքանշաններ, «Արիության համար» մեդալ:

ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ Սուրեն Գրիգորի (1918–1997), գեղանկարիչ: ՀԽՍՀ վաստ. նկարիչ (1980): Հեղինակ է հիմնականում բնանկարների («Բակ Ծաղկաձորում», 1953, «Խաղաղ երեկո», 1963, «Ապարանի նոր ջրամբարը», 1967, «Արագած», 1970, ևն):

ՉԻԼԻՆԳԱՐՈՎ Արթուր Նիկոլայի (ծ. 1939), բևեռախույզ: Աշխարհագր. գիտ. դ–ր (2003): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (2003), ՌԴ Պետ. ծով. ակադ–ի պատվ. պրոֆ. (2002): ԽՄ հերոս (1986, Անտարկտիդայի մոտ «Միխայիլ Սոմով» սառցահատի փրկարար. արշավախումբը ղեկավարելու համար): ՌԴ հերոս (2008): Աշխ–ները վերաբերում են Արկտիկայի յուրացման ու բնապահպանության խնդիրներին: Չ. ընդգրկված է Գինեսի ռեկորդների գրքում՝ որպես միակ բևեռախույզը, որ 6 ամսվա ընթացքում եղել է Երկրի 2 բևեռներում: ՌԲՆԳԱ թղթ. անդամ, Ռուսաստանի բևեռախույզների ընկերակցության նախագահ (1991), ԱՄՆ–ի միջազգ. հետախուզ. ակումբի, Մեծ Բրիտանիայի թագավոր. աշխարհագր. ընկ–յան անդամ, Անտարկտիդայի պահպանության միջազգ. կազմ–յան նախագահ:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1981), «Պատվո նշան» (1976), ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (1981), Լենինի (1986), ՌԴ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 4–րդ (2007), 3–րդ (2014) աստիճանի, «Բևեռային աստղ» (2005, Յակուտիա), ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2008), «Պատվո լեգեոն» (2010, Ֆրանսիա) և բազմաթիվ այլ շքանշաններ, ՌԴ նախագահի

շնորհակալագրեր (1997, 2003, 2007), ՀՀ «Անանիա Շիրակացի» (2000) մեդալ ևն:

ՉԻԼԻՆԿԱՐՅԱՆ Արշակ Գևորգի (1864–1917), մանկավարժ, հոգեբան: Եղել է թեմ. տեսուչ Ալեքսանդրապոլում, Թիֆլիսում, Շուշիում, Երևանում: Տիգրան *Ռաշմաձյանի* և Ավետիք *Իսահակյանի* հետ կազմել է հայոց լեզվի «Դասընկեր» դասագրքերը (I–IV դասարաններ), 1896–1902-ին հրատարակել «Ժողովրդական բնագիտական գրադարան» մատենաշարի 6 գիրք (Տ. Ռաշմաճյանի հետ): Հեղինակ է երեխաների դաստիարակությանը վերաբերող աշխ-ների, աշխարհագրության դասագրքի:

ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ Գրիգոր Հովակիմի (1839–1923), հրապարակախոս, խմբ., թարգմանիչ: 1861–67-ին՝ Զմյուռնիայի *«Ծաղիկ»* հանդեսի հրտ-խմբ. (Արմենակ *Հայկունու*, ապա՝ Սմտթեոս *Սամուրյանի* հետ): Հեղինակ է «Ուղևորութիւն ի Կոստանդնուպօլիս» (1883) գեղ-հրապարակախոս. երկի, «Վիպակներ եւ ցան ու ցիր գրուածներ» (1920), «Զմիւռնական նամականի» ժող-ների: 1867–78-ին թարգմանել և հրատարակել է Վ. Հյուգոյի, Ա. Լամարթինի, Ժ. Սանդի, Ա. Մյուսեի և ուր. երկերից:

ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ Լևոն Նորայրի (ծ. 1948), ջութակահար: Հիմնադրել է «Չիլինկիրյան» լար. քառյակը (Լոնդոն, 1971): Երկացանկում՝ արևմտաեվրոպ. կոմպոզիտորների, Ա. Խաչատրյանի, Ա. Բաբաջանյանի, Տ. Մանսուրյանի, Ա. Հովհաննեսի և ուր. գործերից: 1996-ից՝ շվեդ. «Կամարատա Ռոման» լար. նվագախմբի ղեկ.:

Բեթհովենի անվ. (1969), Մյունխենի (1971) մրցույթների 1-ին մրց-ներ:

ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ Հրաչ Կարապետի (ծ. 1962), սոցիոլոգ, քաղաքագետ, հաս. գործիչ: Սոցիոլոգիայի դ-ր (2003): 1990–95-ին՝ «Վինդոուս Քոուրթելի» (անգլ. և հայ.) պարբ-ի հիմնադիր-խմբ.: 2003-ից ղեկավարում է Քեմբրիջի համալսարանի եվրասիական գիտ. հետազոտությունների ծրագիրը:

ՉԻԼԼԵՐ Թանսու (ծ. 1946), թուրք պետ. գործիչ: 1993–96-ին՝ Թուրքիայի վարչապետ, 1996–97-ին՝ ԱԳ նախարար, 1996–97-ին՝ փոխվարչապետ: 1993–2002-ին՝ «Ճշմարիտ ուղի» կուս-յան նախագահ:

ՉԻԼՈՒԲԱ (Chiluba) Ֆրեդերիկ (1943–2011), Զամբիայի նախագահ՝ 1991–2002-ին: 1975–91-ին՝ Զամբիայի արհմիությունների խորհրդաժողովի նախագահ:

ՉԻԽԱՉԵՎ Պյոտր Ալեքսանդրովիչ (1808–1890), ռուս. աշխարհագետ և երկրաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. անդամ (1876): Կազմել է Ապենինյան թ-կղզու երկրբ. քարտեզը, տվել է Ալթայի, Հսարմ. Չինաստանի երկրբ. և աշխարհագր. նկարագրությունը, Փոքր Ասիայի համալիր բնութագիրը (1853–69): Չ-ի պատվին անվանվել է ծովածոց Ճապոն. ծովում:

ՉԻԿԱԳՈ (Chicago), ք. ԱՄՆ-ի Իլինոյս նահգ-ում՝ Միչիգան լճի ափին: Բն.՝ 2,9 մլն (արվարձաններով՝ ավելի քան 9,6 մլն, 2010): Տնտ. նշանակությամբ ԱՄՆ-ի 3-րդ քաղաքն է, տրանսպորտ. հանգույց (այդ թվում՝ ամենախոշոր երկթղ. հանգույցը): Ունի օդանավակայաններ և մետրոպոլիտեն: ԳՀՓԿՄ բնագավառի գործարար ակտիվության համաշխ. կենտրոններից է: Գործում են բազմաթիվ թանգարաններ, թատրոններ, բուհեր: Հայտնի է երկնաքերներով, որոնց մի մասը կառուցվել է 1880–90-ական թթ-ին:

Չ-ի հայ համայնքը ձևավորվել է 1880–1890-ական թթ-ին: 1910-ին Չ-ում և նրա շրջակայքում բնակվել է շուրջ 1000, 1921-ին՝ 10–12 հզ., 1970-ական թթ-ի սկզբին՝ 20 հզ. հայ: Ներկայում հայերի թիվը շուրջ 25 հզ. է (բուն Չ-ում՝ 10 հզ.): Չ-ում և նրա արվարձաններում գործում են Սբ Գրիգոր Լուսավորիչ, Ամենայն Սրբոց, Սբ Պողոս, Սբ Փրկիչ առաքել. եկեղեցիները, Չ-ի հայ ավետարան. եկեղեցին, որոնց կից՝ «Դանիել Վարուժան», ՀԲԸՄ «Սիսակ Վարժապետյան», «Մեսրոպյան» մեկօրյա դպրոցները, հայ ազգ. կուս-յունների տեղ. կազմ-յունները, Հայ կրթ. հիմնարկությունը, ՀԲԸՄ-ի մասնաճյուղը, ՀՕՄ-ի «Անահիտ» կրտսերաց մասնաճյուղը ևն:

«ՉԻԿԱԳՈ ՏՐԻԲՅՈՒՆ» («Chicago Tribune» – «Չիկագոյի հռետոր»), օրաթերթ ԱՄՆ-ում: Հիմնադրվել է 1847-ին:

ՉԻԿԱԳՈՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, հիմնադրվել է 1857-ին (1886–89-ին չի գործել): Եղել է ԱՄՆ առաջատար գիտ. կենտրոն: 1942-ին Չ. հ-ում Է. *Ֆերմիի* ղեկավարությամբ իրականացվել է առաջին միջուկ. շղթ. ռեակցիան: 2016-ին ուներ շուրջ 5 հզ. ուսանող:

ՉԻԿԻ (Csiky) Գերգեյ Յանոշի (1842–1891), հայազգի հունգարագիր գրող: Հունգարիայի ԳԱ թղթ. անդամ: 1870–73-ին՝ «Ազնատ» թեմ. պաշտոնաթերթի խմբ-հրտ.: Հունգ. դրամատուրգիայում քննադատ. ռեալիզմի առաջին նմուշների հեղինակ («Զրիակերներ», 1880, «Խայտաբղետ թշվառություն», 1881, ևն): Է: Կազմել է «Եկեղեցական վճիռների ժողովածու» (1864) և այլ գրքեր: Հեղինակ է բանաստեղծությունների ժող-ի, «Կանխազգացում» (1875, Հունգարիայի ԳԱ մրց.) չափածո դրամայի, «Սեսիլի հարսանիքը» պիեսի, «Դրամատուրգիա» գրքի:

ՉԻԿԼԱՅՈ (Chiclay), ք. Պերուի հս-արմ-ում, Լամբաեկե դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 531,8 հզ. (արվարձաններով՝ շուրջ 1 մլն, 2010): Ունի օդանավակայան:

ՉԻՀՈՒԱՀՈՒԱ (իսպ.՝ chihuahua), փոքր, գեղազարդիչ շների սեռ: Բուծվել է Մեքսիկայում, կան երկարամազ և կարճամազ տարատեսակներ:

ՉԻՄԱՐՈԶԱ (Cimarosa) Դոմենիկո (1749–1801), իտալացի կոմպոզիտոր, կլավեսիահար, ջութակահար, երգիչ: Բուֆֆ-օպերայի վարպետ («Գաղտնի ամուսնություն», 1792, ևն): Հեղինակ է նաև սերիա-օպերաների («Օլիմպիադա», 1784, «Հորացիոններ և Կուրիացիոններ», 1796, ևն), կանտատների, օրատորիաների, մեսսաների, կամեր. գործիք. և այլ երկերի:

ՉԻՄԲՈՏԵ (Chimbote), ք-նվինգստ Պերուի արմ-ում: Բն.՝ 329,6 հզ. (2010):

ՉԻՄԲՈՐԱԶՈ (Chimborazo), հանգած հրաբուխ Անդերի Արմ. Կորդիլիերներում՝ Էկվադորում: Բարձր.՝ մինչև 6310 *մ*: Գագաթը Երկրի մակերևույթի՝ երկրագնդի կենտրոնից հաշված ամենամեծ հեռ-յան կետն է:

ՉԻՄՔԵՆԴ (1914–24-ին՝ Չեռնյաև, 1992-ից՝ Շիմքենդ), ք. Ղազախստանում, Հվ-ղազախստանյան մարզի կենտրոնը: Բն.՝ շուրջ 600 հզ. (2010): Հայտնի է XII դ-ից:

ՉԻՆԱԲ, գետ Հնդկաստանում և Պակիստանում, Սաթլեջ գետի (Ինդոսի ավազան) աջ վտակը: Երկ.՝ 1100 *կմ*, ավազանը՝ 138 հզ. *կմ*², ջրի միջին ծախսը՝ 890 *մ*³/*վ*: Ակունքները Հիմալայներում են, հատում է Փենջաբը:

ՉԻՆԱԿԱՆ ԳԻՐ, հիերոգլիֆ. վանկագիր: Ձևավորվել է մ. թ. ա. II հզ-ամյակի կեսին: Նշանների ընդհ. թիվը մոտ 100 հզ. է, բայց ժամանակակից լեզվում գործածվում է 4–7 հզ.: Օգտագործվում է նաև Կորեայում, Վիետնամում, Ճապոնիայում:

«ՉԻՆԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ», հրտչ-յուն, հիմնադրվել է 1978-ին Պեկինում: 1979-ից լույս է ընծայում նույնանուն համապարփակ հանրագիտարան (հ. 1–80, 2-րդ հրտ.՝ հ. 1–32, 2000), նաև տեղեկատվ. և գիտահանրամատչելի գրկ.: 1987-ին չին. լույս է ընծայել «Սովետական հանրագիտարանային բառարանը»: Ունի մասնաճյուղ Շանհայում:

ՉԻՆԱԿԱՆ ՄԵԾ ՀԱԲԹԱՎԱՅՐ, Հյուսիսչինական *հարթավայր*, խոշորագույն հարթավայրերից Արլ. Ասիայում՝ Չինաստանում: Տարածքը՝ մոտ 325 հզ. *կմ*²: Արլ-ում Շանդունյան լ-ներն են: Խոշոր գետերը՝ Հուանհե, Հայհե, Հուայհե, Լուանհե: Երկրագնդի խիտ բնակեցված շրջաններից է: Չ. մ. հ-ում են Պեկինը, Տյանցզինը և այլ խոշոր ք-ներ:

ՉԻՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՐԻՍՊ, բերդապարիսպ, ճարտ. հուշարձան Հս. Չինաստանում: Չգվում է արլ–ից արմ.՝ Շանհայգուան ք–ից մինչև Լյաոդունյան ծովածոց, մինչև Յզյայույգուան կետը: Երկ.՝ շուրջ 6250 *կմ* (ճյուղավորումներով և առանձին ինքնուրույն տեղամասերով), բարձր.՝ 6–8 (առանձին հատվածներում՝ մինչև 10) *մ*: Կառուցվել է մ. թ. ա. IV դ–ից սկսած: Չ. մ. պ-ի հիմն. մասը պահպանվել է մինչև մեր օրերը: Պեկինին մոտ հատվածն ամբողջությամբ վերականգնվել է: Աշխարհի նոր 7 հրաշալիքներից, Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՉԻՆԱԿԱՆ ՄԵԾ ՋՐԱՆՑՔ, Մեծ *ջրանցք* (չին.՝ Յունհե – տրանսպորտ. գետ): Ջրատեխ. խոշոր կառույց է Չինաստանում, նավարկելի ջրանցք: Կառուցումն սկսվել է մ. թ. ա. VI դ–ում, ավարտվել XIII դ–ում: Անցնում է հս-հվ.՝ Պեկինի շրջանից մինչև Հանչժոու, հատում Հուանհե, Հուայհե և Յանցզի գետերը: Երկ.՝ 1782 *կմ*: Ջրանցքի համակարգն ընդգրկում է նաև բնական ջր. ուղիներ (Բայհե գետը, Վեյշանհու լիճը ևն): Գլխ. նվինգստ-ները՝ Ցանչժոու, Սուչժոու, Ուսի, Հանչժոու:

ՉԻՆԱԿԱՆ ՎԱՐԴԵՆԻ (Hibiscus rosa-sinensis), տուղտազգիների ընտանիքի փոքր ծառ կամ խոշոր թուփ: Բարձր.՝ 3–6 *մ*: Տերևները ձվաձև են, սրածայր, սղոցաեզր: Ծաղկում է գարնանից մինչև ուշ աշուն: Ջերմասեր է, հողի նկատմամբ՝ պահանջկոտ, խոնավասեր: Տարածված է Հվ-արլ. Ասիայում: Լուրից ստանում են թել, որը Ճապոնիայում և Չինաստանում օգտագործում են խսիրներ, պարաններ, թուղթ են պատրաստելու համար, պսակաթերթիկներից՝ ներկ: Օգտագործվում է նաև ժող. բժշկության մեջ:

ՉԻՆԱՍՏԱՆ, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, պետություն Կենտր. և Արլ. Ասիայում: Սահմանակից է ՌԴ-ին, Մոնղոլիային, Հս. Կորեային, Պակիստանին, Վիետնամին, Լաոսին, Միանմային, Բութանին, Նեպալին, Հնդկաստանին, Աֆղանստանին, Տաջիկստանին, Ղրղըզստանին, Ղազախստանին: Տարածքը՝ 9,6 մլն *կմ*², բն.՝ 1,37 մլրդ (2015): Մայրաքաղաքը՝ *Պեկին*: Պետ. լեզուն՝ չին.: Կառավարման ձևը՝ հանրա-

պետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ ժող. ներկայացուցիչների համաժին. ժողովը: Բաժանված է 22 վարչ. պրովինցիաների, 5 ինքնավար շրջանների, 4 հանրապետ. ենթակայության քաղաքների և 2 հատուկ վարչ. շրջանների: Հավատացյալների մեծ մասը կոնֆուցիական է, կան նաև դաոսականներ և բուդդայականներ: Անդամակցում է ՄԱԿ–ին, ԲՌԻԿՍ–ին, Շանհայի համագործակցության կազմ–յանը, ԱտտՀԿ–ին ևն: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 6,6 հզ. ԱՄՆ դոլար է (2013): Արտահանում է հագուստ, կոշիկ, խաղալիքներ, էլեկտրոնիկա, հեծանիվներ, պողպատ, տեքստիլ, ցորեն, թեյ, բրինձ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթ, դեղորայք, քիմիկատներ, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ յուան:

Չ–ում 1–ինն ստեղծվել են Սյու (մ. թ. ա. 2205–1767) և Ին (Շահ, մ. թ. ա. 1766–1122 կամ 1600–1027) հարստությունները: Մ. թ. ա. XI դ–ում Ին պետության տարածքը գրավել են չժոու ցեղերը և ստեղծել Չժոու պետությունը (մ. թ. ա. XI–III դդ.): Մ. թ. ա. VI–III դդ–ի շրջանը բնորոշվում է փիլ. մտքի ծաղկմամբ (կոնֆուցիականություն, դաոսականություն, ֆացզյա ևն): Չժանգո պետությունը մ. թ. ա. VII դ–ում տրոհվել է մի քանի ինքնուրույն պետությունների: Մ. թ. ա. III դ–ի վերջին ստեղծվել է Չ–ի առաջին կենտրոնացված Ցին կայսրությունը, որի հիմնադիր Ցին Շի Հուանդիի օրոք կառուցվել է Չին. մեծ պարսպի զգալի մասը՝ վաչկատուն ցեղերի հարձակումներից պաշտպանվելու համար: Ցին հարստությանը փոխարինել է Հան հարստությունը (մ. թ. ա. 206–մ. թ. 220): Մ. թ. ա. II դ–ում կառուցվել է «մետաքսի ճանապարհը»՝ դեպի Միջին Ասիա և Մերձ. Արևելք: Կայսր Ու Դիի (մ. թ. ա. 140–87) ժամանակ կոնֆուցիականությունը ճանաչվել է պաշտոն. գաղափարախոսություն: Հան հարստության ժամանակաշրջանում վերջնականապես կազմավորվել է միասն. ժողղ–ը, որը հետագայում անվանվել է «հան»: Մ. թ. ա. 184–ին սկսվել է գյուղաց. («դեղին գլխակապերի») հզոր ապստամբություն, Հան կայսրությունը տրոհվել է 3 թագավորության, որոնց գոյության ժամանակաշրջանը (220–280) կոչվել է Սանգո («Եռաթագավորություն»): 316–ին վաչկատուն ցեղերը զավթել են Հս. Չ., որտեղ տարբեր ժամանակներում ստեղծվել են ոչ չին. մի քանի թագավորություններ: 589–ին Չ. միավորվել է Սուն հարստության իշխանության ներքո: 618–ին նրան հաջորդել է Տան հարստությունը (մինչև 907–ը), որը նվաճող. քաղ–յուն է վարել Կորեայում և Կենտր. Ասիայում: Տան կայսրությունը գյուղաց. ապստամբությունների հետևանքով X դ–ի սկզբին անկում է ապրել: X դ–ի 2–րդ կեսին Չ–ի տարածքի զգալի մասը միավորել է Սուն հարստությունը (960–1279): Մինչև XIII դ–ի 2–րդ կեսը Չ. նվաճել են մոնղոլները և հիմնել մոնղ. Յուան հարստությունը (1271–1368): 1368–ին մոնղոլները վտարվել են Չ–ից. իշխանության գլուխ է անցել չին. Մին հարստությունը (1368–1644): XVI դ–ից Չ. են ներթափանցել եվրոպացիները: 1628–45–ի գյուղաց. պատերազմի հետևանքով Մին կայսրությունը տապալվել է: Մանջուրները գրավել են Չ. և հիմնել իրենց Ցին հարստությունը (1644–1911): XIX դ–ի կեսերին սկսվել է եվրոպ. պետությունների ագրեսիան: ԱՄՆ–ն, Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան օգնել են Ցիներին՝ ճնշելու տայպինների գյուղաց. ապստամբությունը: XX դ–ում Չ. տարբեր երկրների կիսագաղութ էր: Երկրում սկսվել է ազատագր. շարժում՝ Սուն Յաթսենի ղեկավարությամբ: 1911–ին Ցին հարստությունը տապալվել է: 1912–ին կազմավորվել է Չ–ի Հանրապետությունը: Սուն Յաթսենն ստեղծել է Գոմինդան կուս–յունը: 1921–ին ձևավորվել է Չ–ի կոմկուսը (ՉԿԿ): 1927–28–ին Չ–ի տարածք. ամբողջականությունը վերականգնվել է: Նանկինում ազգ. կառ–յան ներկայացուցիչ է դարձել ***Չան Կայշին***: 1932–ին Ճապոնիան բռնազավթել է Մանջուրիան և ստեղծել Մանջյոու–գո պետությունը: 1937–ին Ճապոնիան սկսել է ամբողջ Չ–ի նվաճման պատերազմ, որի ընթացքում (1937–45) սրվել են Չան Կայշիի և ՉԿԿ–ի (գլխ քարտուղար՝ ***Մաո Ցզեդուն***) հարաբերությունները: Ճապոնիայի կապիտուլյացիայից հետո երկրում կրկին սկսվել է քաղաքաց. պատերազմ: ՉԿԿ–ի զինուժը գրաղեցրել է ամբողջ մայրցամաք. Չ. և ստիպել Չան Կայշիին ապաստանել Թայվանում: 1949–ին հռչակվել է ՉԺՀ–ն, որին 1950–ին միացվել է նաև Տիբեթը: 1956–ին հաստատվել է սոցիալիզմի կառուցման գլխ. գիծը: Մաո Ցզեդունի նախաձեռնած այսպես կոչված «մեծ թռիչքի» (1958–60) և «մշակութային հեղափոխության» (1966–1976) քաղ–յունը դանդաղեցրել են երկրի զարգացումը: Նրա մահից (1976) հետո երկրում իրականացվում է տնտ–յան և քաղ. կյանքի արդիականացման քաղ–յուն՝ այն հեռանկարով, որ երկիրը XXI դ–ի կեսերին վերածվի բարձրզարգացած կայսրության: Ընդլայնվել է ձեռն–ների տնտ. ինքնուրույնությունը, տնտ–յան մեջ թույլատրվել է բազմակացութաձևությունը, արտաքին կապիտալի ներգրավման նպատակով ստեղծվել են «բաց տնտեսական շրջաններ» և «հատուկ տնտեսական գոտիներ»: Մեծ Բրիտանիան 1997–ին Չ–ին վերադարձրել է Սյանգանը (Հոնկոնգ), 1999–ին Պորտուգալիան՝ Մակաոն (Աոմին), որոնք ստացել են հատուկ վարչ. շրջանների կարգավիճակ: ԵԱՏՄ (2000–ից), Շանհայի համագործակցության կազմ–յան (2001–ից) անդամ է:

Հայերը Չ–ում առաջին անգամ հիշատակվում են II դ–ում: Նրանք եղել են մետաքս և այլ ապրանքներ արտահանող վաճառականներ: Հայկ. փոքր գաղութներ հիմնվել են մոնղ. արշավանքներից հետո (XIII դ.), երբ Հայաստանից գերեվարված հայերի մի մասը բնակեցվել է Չ–ի հս–ում: XIX դ–ում հայեր են եկել Հնդկաստանից ու հարևան երկրներից և հաստատվել Մուկդեն, Խարբին, Չանչուն, Շանհայ ք–ներում: Խարբինի համայնքն ուներ եկեղեցի, ներքին սահմանադրություն: Այստեղ 1930–ին հիմնվել է «Արծիվ» միությունը, Հայ երիտասարդ. ակումբը, Հայ տիկնանց միությունը: 1937–ին Շանհայում կար 200 հայ ընտանիք (հետագայում նրանց թիվը հասել է 600–ի): Ճապոն. ներխուժման ժամանակ նրանք գաղթել են: Ներկայում Չ–ում ապրում է մոտ 160 հայ, հիմնականում՝ Պեկինում և Հոնկոնգում:

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ, հիմնադրվել է 1949–ին Պեկինում՝ Նանկինի և Պեկինի ակադ–ների միավորմամբ: 2016–ին ուներ շուրջ 700 անդամ, ավելի քան 200 ԳՀՀ:

ՉԻՆԱՐԵՆ, *չինացիների* լեզուն, ՉԺՀ–ի պետ., Սինգապուրի, ՄԱԿ–ի պաշտոն. լեզուներից: Պատկանում է չին–տիբեթ, լեզվաընտանիքին: Հնագույն գրավոր հուշարձաններն ավանդվել են մ. թ. ա. II դ–ի 2–րդ կեսից: Գիրը հիերոգլիֆային է: Տես նաև ***Չինական գիր***:

ՉԻՆԱՐՈՎ Ռուբենս (Մսերյան Ռուբեն Զարմայրի, 1869–1943), դերասան, դրամատուրգ: ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1935): 1884–ից՝ Օդեսայի, Խարկովի, Կիևի, Մոսկվայի թատրոնների դերասան (Բորչինսկի՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», Միտրոֆան՝ Դ. Ի. Ֆոնվիզինի «Տհասը», ևն): Հեղինակ է շուրջ 49 պիեսի («Թանկագին համրույր», բեմ.՝ Մոսկվայում՝ 1897, Ստավրոպոլի հայկ. թատրոնում՝ 1921, Ալեքսանդրապոլում՝ 1923): Կատարել է թարգմ–յուններ, փոխադրություններ:

ՉԻՆԱՅԻՆԵՐ, 1. ժողղ, ՉԺՀ–ի (1,14 մլրդ, 2000), Թայվանի (22,5 մլն), Սյանգանի (6,6 մլն), Աոմինի (0,4 մլն) հիմն. բնակչությունը, պաշտոնապես առանձնացվում է 56 ժողղ: Ապրում են նաև Սինգապուրում (2,7 մլն, 2005), Մալայզիայում (6,2 մլն), Ինդոնեզիայում (7,6 մլն), Թաիլանդում (7,1 մլն), ԱՄՆ–ում (2,3 մլն, 2000), Կանադայում (1,3 մլն, 2006), Պերուում (1,3 մլն), Վիետնամում (1,3 մլն), Մյանմայում (1,1 մլն), Ֆիլիպիններում (1,1 մլն) ևն: Լեզուն՝ չին.: Հավատացյալները հիմնականում կոնֆուցիականության, դաոսականության և բուդդայականության հետևորդ են:

ՉԻՆԳԻՍ ԽԱՆ (Թեմուչին, մոտ 1155–1227), մոնղ. կայսրության հիմնադիր, զորավար: 1206–ին մոնղ. ավագանու կուրուլթայում (համաժողով) հռչակվել է մեծ խան և ստացել Չինգիս (ուժեղ, հզոր) տիտղոսը: Ձեռնարկել է մի շարք նվաճող. արշավանքներ դեպի Ասիա և Արլ. Եվրոպա՝ իր ճանապարհին ամայացնելով ամեն ինչ: Ստեղծել է հսկայածավալ կայսրություն:

ՉԻՆԳՈԼԱ, (Chingola), ք. Զամբիայի հս–ում: Բս.՝ 178 հզ. (2010): Պղնձի արդյունահանման և ձուլման կենտրոն է:

ՉԻՆԻԼԻՆ Անատոլի Իվանովիչ (1913–1984), վոլեյբոլի ռուս. դպրոցի հիմնադիրներից: ԽՍՀՄ ս. վ. վ. (1944), վ. մ. (1956): ԽՍՀՄ բազմակի չեմպիոն (1930–ական թթ.):

ՉԻՆՋՈՒ, Չինժու, ք. Կորեայի Հանրապետությունում՝ Նամգապ գետի ափին: Բս.՝ 300,6 հզ. (2010): Կենսատեխնոլոգիաների, քիմ. և նոր նյութերի արտադր–յան բնագավառի ԳՀՓԿԱ իրականացման կենտրոններից է, մետաքսի արտադր–յան գլխ. կենտրոնը:

ՉԻՆ–ՏԻԲԵԹԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, ցեղակից լեզուների ընտանիք: Տարածված է Արլ., Հվ–արլ. և Հվ. Ասիայում: Բաղկացած է մի քանի ճյուղերից՝ տիբեթ. (տիբեթ., բալտի, գուրուն, մուրմի, մանյակ, տուուչու, տակպա, խաուրպա ևն), թաի–չին. (չին., թայ՝ սիամերեն, լաոս.), բիրման. (բիրման., կուկի–չին, մանիպուրի):

ՉԻՆՈՒԿԻՆ, Չինդվին, գետ Սյանմայի արմ–ում, Իրավադի գետի ամենամեծ (աջ) վտակը: Երկ.՝ շուրջ 1100 *կմ*, ավազանը՝ 114 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 4 հզ. *մ*^{3}/*վ*: Նավարկելի է ստորին հոսանքում:

ՉԻՈՆԳ ՏԻՆ (Truong Chinh, 1907–1988), Վիետնամի կոմկուսի ԿԿ գլխ. քարտուղար՝ 1986–ի հուլիս–դեկտ–ին: 1981–87–ին՝ Պետ. խորհրդի նախագահ, 1960–81–ին՝ Վիետնամի Սոց. Հանրապետության

Ազգ. ժողովի մշտ. կոմիտեի նախագահ, 1941–56-ին՝ Աշխատավոր. կուս-յան ԿԿ գլխ. քարտուղար:

ՉԻՉԱԳՈՎ Պավել Վասիլևիչ (1767–1840), ռուս. ծովակալ (1807): Վ. Յ. *Չիչագովի* որդին: 1802–11-ին՝ ծով. ուժերի նախարար: 1812-ի Հայրեն. պատերազմի ժամանակ գլխավորել է Նապոլեոն. զորքերի հվ. թևի դեմ կռվող բանակը:

ՉԻՉԱԳՈՎ Վասիլի Յակովլևիչ (1726–1809), ռուս ծովագնաց, ծովակալ (1782): Պ. Վ. *Չիչագովի* հայրը: 1764–66-ին գլխավորել է Արխանգելսկից Հս. սառուցյալ օվկ-ով դեպի Հս. Ամերիկա և Կամչատկա ծով. ուղի որոնող հետախուզ. արշավախումբը: 1788–90-ի ռուս-շվեդ. պատերազմի ժամանակ գլխավորել է Բալթ. նավատորմը: Հաղթանակներ է տարել Էլանդ և Ռևել կղզիների մոտ, Վիբորգի ծոցում:

ՉԻՉԵՆ ԻՑԱ (Chichén Itzá), մայա հնդկացիների քաղաք (VIII–XII դդ.) Յուկատան թ–կղզու (Մեքսիկա) հս–ում: Աշխարհի նոր 7 հրաշալիքներից է:

ՉԻՉԵՐԻՆ Բորիս Նիկոլաևիչ (1828–1904), ռուս իրավաբան, պատմաբան, փիլ.: Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. անդամ (1893): Ռուս. պատմ. աշխարհագրության «Պետական դպրոցի» հիմնադիրը: Աշխ-ները վերաբերում են պետ. իրավունքի, քաղ. ուսմունքների պատմության հարցերին:

ՉԻՉԵՐԻՆ Գեորգի Վասիլևիչ (1872–1936), խորհրդ. քաղ. և պետ. գործիչ, դիվանագետ: 1918–30-ին՝ ՌԽՖՍՀ և ԽՍՀՄ ԱԳ ժողկոմ: Ստորագրել է Բրեստի հաշտության պայմանագիրը (1918): Ջենովայի (1922) և Լոզանի (1922–23) համաժողովներում խորհրդ. պատվիրակության ղեկ.: Աշխ-ները վերաբերում են միջազգ. քաղ-յանը: Ձգտել է կարգավորել Հայաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի միջև հարաբերությունները՝ տարածաշրջանում խաղաղություն հաստատելու համար. «Խլել Հայաստանից որևէ մաս և մեր ձեռքով տալ Ադրբեջանին, կնշանակեր կատարյալ կեղծ երանգ տալ մեր ամբողջ քաղաքականությանը Արևելքում»:

ՉԻՉԻԲԱԲԻՆ Ալեքսեյ Եվգենևիչ (1871–1945), ռուս քիմիկոս-օրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1929): Աշխ-ները վերաբերում են օրգ. սինթեզին, ազոտ պարունակող տարբացիկլ. միացությունների և ալկալոիդների քիմիային: Հայտնագործել է պիրիդինի ամինացումը նատրիումի ամիդով (Չ–ի ռեակցիա): Քիմիահեղագործ. արդ-յան հիմնադիրներից է: Հեղինակ է «Օրգանական քիմիայի հիմնական սկզբունքները» (1925) հիմնարար դասագրքի: Վ. Ի. Լենինի անվ. մրց. (1926):

ՉԻՉԻԽԱՆ, Չիչկան, գետ ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում, Փամբակի ձախ վտակը: Սկիզբ է առնում Շիրակի լ–շղթայի հս–արլ. լանջերից՝ 2250 *մ* բարձր–ից: Երկ.՝ 29 *կմ*, ավազանը՝ 192 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1,74 *մ*^{3}/*վ*: Թոչկանի ջրվեժից ներքև ընդունում է կիրճի տեսք: Ձրերն օգտագործվում են ոռոգման նպատակով: Չ–ի հովտում էր 1988-ի Սպիտակի երկրաշարժի վերնակենտրոնը:

ՉԻՁԻԽԱՆ (Hippophae), **փշարմավ, ձիափուշ**, փշատազգիների ընտանիքի տերևաթափ ծառերի կամ թփերի ցեղ: Հայտնի է 3 տեսակ, ՀՀ–ում՝ 1՝ Սյունիքի, Վայոց ձորի մարզերում, Սևանի ավազանում են: Պտուղը հյութալի կորիզապտուղ է՝ նարնջագույն, կարմրավուն, պարունակում է C, E, P, K, B_1, B_2, B_6 վիտամիններ, կարոտին (A-նախավիտամին) են, թթուներ (խնձորաթթու, գինեթթու, ֆոլաթթու), շաքար, սերմերը՝ յուղ, տոկոֆերոլ, կարոտին (A-նախավիտամին), տերևները՝ աղաղանյութեր, ֆիտոնցիդներ, ֆլավոնոիդներ են: Յուղն օգտագործվում է վերքերի, աչքի եղջերաթաղանթի վնասվածքների, այրվածքների, էկզեմայի, ստամոքսի խոցի բուժման համար:

ՉԻՍԼՅԱՆ (Չիսլիև) Դավիթ Գևորգի (1879–1970), ճարտ.: Հեղինակ է Թիֆլիսում բնակելի տների (1918, 1922), դպրոցների, «Քաղաքային խմբակ» («Կրուժոկ») եռահարկ ակումբի (1914, այժմ՝ Սպայի տուն), «Զարյա Վոստոկա» թերթի խմբագրատան (մրցութ. նախագիծ, 1927, 1-ին մրց.՝ 1930) նախագծերի, Լենինականի կենտրոնի մանրամասն հատակագծի (1926), «Շիրակ» հյուրանոցի (1928), պետբանկի շենքի, Մոչիում՝ «Բելվեդեր» ռեստորանի, Մոսկվայում՝ բնակելի տան (1935) և այլ նախագծերի: Արթիկում հայտնաբերել է տուֆի մեծ հանքաշերտեր:

ՉԻՍՍԱՆՈ (Chisanó), Ժոակիմ (Ժոակին) Ալբերտու (ծ. 1939), Մոզամբիկի նախագահ՝ 1986–2005-ին: Գեն–մայոր:

ՉԻՍՏՅԱԿՈՎ Իվան Միխայլովիչ (1900–1979), խորհրդ. զորահրամ., գեն-գնդ. (1944): ԽՄ հերոս (1944): ՀՄՊ-ի ժամանակ՝ հրաձգ. բրիգադի, դիվիզիայի և կորպուսի հրամ., բանակների գլխ. հրամ.:

ՉԻՍՏՅԱԿՈՎ Միխայիլ Նիկոլաևիչ (1896–1980), խորհրդ. զորահրամ., հրետանու մարշալ (1944): ՀՄՊ-ի ժամանակ՝ ռազմաճակատի և բանակի հրետանու պետ, 1943-ից՝ Կարմիր բանակի հրետանու գլխ. հրամ-ի տեղակալ: 1946–57-ին՝ ԽՍՀՄ ՋՈՒ հրետանու գլխ. հրամ-ի տեղակալ:

ՉԻՍՏՅԱԿՈՎ Պավել Պետրովիչ (1832–1919), ռուս. գեղանկարիչ, մանկավարժ: Պատմ. թեմաներով կտավներում ձգտել է հոգեբ. հագեցվածությամբ կերպարների («Բոյարը», 1876, ևն): Աշակերտներից են Վ. Մ. Վոսնեցովը, Մ. Ա. Վռուբելը, Ի. Ե. Ռեպինը, Վ. Ա. Սերովը, Վ. Ի. Սուրիկովը և ուր.:

ՉԻՎԻԼԻԽԻՆ Վլադիմիր Ալեքսեևիչ (1928–1984), ռուս. գրող: Հեղինակ է «Կլավա Իվանովայի մասին» (1964), «Շվեդական կանգառներ» (1974), «Քաղաքներով և գյուղերով» (1976) վիպակների, նաև «Հիշողություն» (գիրք 1, 2, 1978, 1981) վեպ-էսսեի, կենսագրությունների:

ՌԽՖՍՀ Մ. Գորկու անվ. (1977), ԽՍՀՄ (1982) Պետ. մրց-ներ:

ՉԻՏԱ, ք., ՌԴ Անդրբայկալ. երկրամասի վարչ. կենտրոնը՝ Ինգոդա գետի ափին: Բն.՝ 307,1 հզ. (2009): Մոտակայքում արդյունահանվում է ածուխ: Հայտնի է 1680-ական թթ–ից, 1826–30-ին դեկաբրիստների բանտարկության վայրն էր, 1920–55-ին՝ Հեռավորարլ. հանրապետության մայրաքաղաքը:

ՉԻՏԱԳՈՆԳ, ք., Բանգլադեշի համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 3,87 մլն (2010): Տրանսպորտ. հանգույց է, երկրի գլխ. ծով. նվինգստ-ը (բեռնաշրջանառությունը՝ շուրջ 15 մլն *տ*)՝ Կառնապուլի գետի ափին՝ Բենգալյան ծոցից 15 *կմ* հեռ-յան վրա: Ունի համալսարան: Հայտնի է I դ–ից:

ՉԻՏՇՅԱՆ Վիգեն Հովհաննեսի (ծ. 1941), պետ. գործիչ, դիվանագետ: Տեխ. գիտ. դ–ր (1990), պրոֆ. (1994): Ունի արտակարգ և լիազոր դեսպանի կարգավիճակ: 1991–93-ին՝ ՀՀ պետ. նախարար, 1993–95-ին՝ փոխվարչապետ: ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ֆրանսիայում (1995–97 և 2009–ից), Բելգիայում, Նիդեռլանդներում և Լյուքսեմբուրգում, Վատիկանում (2012–13), Անդորրայում, Մոնակոյում: ՀՀ առաքելության ղեկ. ԵՄ–ում (1997–2009), ՆԱՏՕ–ում (1997–2004):

ՀՀ «Մխիթար Գոշ» մեդալ (2000), Բելգիայի Թագավորության «Մեծ խաչ» (2009), Ֆրանսիայի «Արժանիքների համար» պետ. (2011) շքանշաններ:

ՉԻՐ (Coregonus nasus), **չչոկուր**, սիգեր սեռի ամենախոշոր ձուկը: Կ. գ. սովորաբար՝ 2–4 *կգ*, երբեմն՝ մինչև 16 *կգ*: Ապրում է Հս. սառուցյալ օվկ–ի ավազանի գետերում և լճերում: Արդյունագործ. արժեքավոր ձուկ է:

ՉԻՐԱԽՅԱՆ Կարապետ Խաչատուրի, **Չիրախով Կարպո** (1873–1913), գեղանկարիչ: Հեղինակ է բնանկարների, դիմանկարների, կենցաղ. և պատմ. թեմաներով պատկերների («Լյուքսեմբուրգյան պարտեզ», «Լճափ», «Իշխանուհու դիմանկարը», «Օգոստոս կայսեր վերադարձը Եգիպտոսից», 1907, «Մի անկյուն սենյակում», 1908–09, վերջին երկուսը՝ ՀԱՊ–ում, ևն):

ՉԻՐԻԿՈՎ Եվգենի Նիկոլաևիչ (1864–1932), ռուս. գրող: 1920–ից՝ վտարանդի: Հեղինակ է «Տղամարդիկ» (1906) և այլ պիեսների, «Տարխանովի կյանքը» (գիրք 1–4, 1911–25), «Գազանն անդունդից» (1926) և այլ վեպերի, նաև ռեալիստ. պատմվածքների: Հայ. հրատարակվել են «Կեանքի շէմքին» (1909), «Վաճառված խիղճը» (1923) գործերը:

ՉԻՐԿՈՎ Բորիս Պետրովիչ (1901–1982), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1950): Սոց. աշխ. հերոս (1975): 1950–65-ին՝ Մոսկվայի Ա. Ս. Պուշկինի անվ. դրամայի, 1966–ից՝ Ն. Վ. Գոգոլի անվ. թատրոնների դերասան: Նկարահանվել է «Մաքսիմի պատանեկությունը», «Մաքսիմի վերադարձը», «Ուսուցիչը», «Գլինկա», «Հավատարիմ ընկերներ», «Ողջերն ու մեռածները», նաև «Արտակարգ հանձնարարություն» (1965, Հայֆիլմ) և այլ կինոնկարներում: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1947, 1949, 1952):

ՉԻՐՈԿԻ (չերոկե), իրոկեզների խմբի հնդկացի ժողդ ԱՄՆ–ում (Հս. Կարոլինա և Օկլահոմա նահանգ–ների ռեզերվացիաներ): Ընդհ. թիվը՝ 281,1 հզ. (2000): Լեզուն՝ չերոկի: Բապտիստներ և մեթոդիականներ են:

ՉԻՐՉԻԿ, գետ Ուզբեկստանում, Սիրդարյայի աջ վտակը: Կազմավորվում է Չատկալ և Պսկեմ գետերի միավորմամբ: Երկ.՝ 161 *կմ*, ավազանը՝ 14,9 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 221 *մ*^{3}/*վ*:

ՉԻՐՎԻՆՍԿԻ Նիկոլայ Պետրովիչ (1848–1920), ռուս. անասնաբույծ, Ռուսաստանում փորձառ. անասնաբուծ. գիտ-յան հիմնադիրը: Հեղինակ է «Ընդհանուր անասնապահություն» (1888) բուհ. դասագրքի:

ՉԻՀՈՒԱՀՈՒԱ (Chihuahua), նահգ Մեքսիկայի հս–ում: Տարածքը՝ 247 հզ. *կմ*^{2}, բն.՝ 3,4 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ Չիուահուա (բն.՝ 762 հզ., 2010):

ՉԻՓ (անգլ.՝ chip – բառացի՝ կտոր, բեկոր), բյուրեղ. կիսահաղորդիչ կամ դիէլեկտրիկ. թիթեղ (*սմ*^{2}-ի մասերից մինչև մի քանի *սմ*^{2} մակերեսով), որի ծավալում կամ մակերևույթին ձևավորված են ինտեգրալ սխեմա (կամ դրա մասը), առանձին էլեկտրոն. սարք կամ միկրոհավաքածու,

նաև միջտարրային միացություններ և հպում. մակերեսներ: Գրկ–յան մեջ «Չ.» եզրույթի հետ երբեմն օգտագործում են համարժեք «բյուրեղ» կամ «միկրոսխեմա» հասկացությունը:

ՉԻՔՈՒՎԱ, Առնոլդ Ստեփանի (1898–1985), վրացի լեզվաբան, բանասեր: ՎԽՍՀ ԳԱ ակադ. (1941): ՎԽՍՀ ԳԱ հիմնադիրներից (1941): Հեղինակ է կովկասագիտ–յանը (քարթվել. և նախյան–դաղստանյան լեզուներ), ընդհ. լեզվաբ–յանը վերաբերող աշխ–ների: Կազմել է «Ճանեբեն–մեգրելերեն–վրացերեն բառարան» (1938): «Վրացերենի բացատրական բառարան»–ի (հ. 1–8, 1950–64) խմբ.:

ՉԻՔՈՎԱՆԻ Սիմոն Իվանեի (1902/03–1966), վրացի բանաստեղծ: Հեղինակ է «Երգ Դավիդ Գուրամիշվիլու մասին» (1942–46) քնարաէպիկ. պոեմի, «Գյանջայի օրագիրը» (1964–65) քնարաէպիկ. շարքի: Հայ. հրատարակվել է «Եղբայրության ճամփաներով» (1955) բանաստեղծությունների ժող–ը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1947):

ՉԻՖԹԵ–ՍԱԼԱՖ Օննիկ (Աբիսողոմյան Հովհաննես Գրիգորի, 1874–1932), գրող, հրտ.: 1919–ին Կ. Պոլսում հիմնադրել է «Հայ միտք» շաբաթաթերթը, եղել է Մարսելի ազգ. վարժարանի տնօրեն: 1928–ից՝ Ժնևում: Հեղինակ է «Միամիտի մը արկածները» (1908) վեպի, «Թուրք թէրօրի օրերէն: Իմ բանտարկութիւնս» (1909) հուշագրության, նաև նորավեպերի, քրոնիկների, ուղեգրությունների, հոդվածների, խորհրդածություն–աֆորիզմների:

ՉԻՖԼԻԿՅԱՆ Արշալույս Ենոքի (1913–2001), գեղանկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ: 1938–53–ին՝ Վրաստանի Մշխեթի պետ. թատրոնի (Գ. Սունդուկյանի «Խաթաբալա», 1938, ևն), 1953–56–ին՝ ԵՊՀԹ (Գ. Ցաղջյանի «Ոսկի քաղաք», 1954, ևն) նկարիչ, 1956–74–ին՝ հայկ. հեռուստաստուդիայի նկարիչ–բեմադրող (Նար–Դոսի «Ես և նա», 1957, Բ. Նուշիչի «Երկու գող», 1967, ևն): Ձևավորել է նաև «Սայաթ–Նովա» (1960) ֆիլմը: Հեղինակ է գեղանկարչ. գործերի («Ցասման Մհերը», 1960, ևն):

ՉԻՆԻՉԵ Թեմուր Նոդարի (ծ. 1943), վրացի ռեժ., դերասան: ՎԽՍՀ (1981), ՌԴ (1994) ժող. արտիստ: 1970–80–ին՝ Թբիլիսիի Շ. Ռուսթավելու անվ. թատրոնի ռեժ., 1981–ից՝ Կ. Մարջանիշվիլու անվ. թատրոնի գեղ. ղեկ., 1988–ից՝ հեռուստաթատրոնի, 2004–ից՝ Ս. Պետերբուրգի Դրամատիկ. մեծ թատրոնի գլխ. ռեժ. (2007–ից՝ գեղ. ղեկ.): Բեմադրել է Սոֆոկլեսի «Էդիպ արքա» (1976), «Փլուզում» (1982, 1984, ըստ Մ. Ս. Ջավախիշվիլու), Ֆ. Շիլլերի «Սեր և խարդավանք» (1990), Ա. Միլլերի «Սալեմի վհուկները» (1991), Վ. Շեքսպիրի «Մակբեթ» (1995) և այլ գործեր:

Լենինյան մրց. (1986):

ՉԻՉԻՉԵ Նիկոլայ Սեմյոնովիչ (1864–1926), վրացի քաղ. գործիչ, մենշևիկների կուսյան առաջնորդներից: 1917–ին՝ բանվ. և զինվ. պատգմ–ների Պետրոգրադի խորհրդի գործկոմի նախագահ, Համառուսաստան. ԿԳԿ 1–ին գումարման նախագահ: 1918–ից՝ Անդրկովկասի սեյմի նախագահ: 1921–ից՝ վտարանդի: Ինքնասպանություն է գործել:

ՉԻՉԻՉԵ Ռևազ Դավիդի (1926–2015), վրացի կինոռեժ.: ՎԽՍՀ (1966), ԽՍՀՄ (1980) ժող. արտիստ: Նկարահանել է «Մեր բակը» (1957), «Զինվորի հայրը» (1965), «Տնկիներ» (1973), «Քո որդին, երկիր» (1981) ֆիլմերը:

Լենինյան մրց. (1986, 1990–ին հրաժարվել է):

ՉԽԵՆԿԵԼԻ Ակակի Իվանովիչ (1874–1959), վրաց մենշևիկների պարագլուխներից: 1898–ից՝ սոցիալ–դեմոկրատ: 1917–ին՝ Ռուսաստանի ժամանակավոր կառ–յան ներկայացուցիչն Անդրկովկասում: 1918–ից՝ Անդրկովկասի ժամանակավոր կառ–յան ղեկ., այնուհետև՝ Վրաստանի մենշևիկյան կառ–յան ԱԳ նախարար, Վրաստանի դեսպանորդը Փարիզում: 1921–ից՝ վտարանդի:

ՉԽԻԿՎԱՉԵ Ռամազ Գրիգորի (1928–2011), վրացի դերասան: ՎԽՍՀ (1972), ԽՍՀՄ (1981) ժող. արտիստ: Սոց. աշխ. հերոս (1988): 1951–ից՝ Թբիլիսիի Շ. Ռուսթավելու անվ. թատրոնի դերասան (Ազդակ՝ Բ. Բրեխտի «Կովկասյան կավճե շրջանը», Ռիչարդ III, Լիր արքա՝ Վ. Շեքսպիրի «Ռիչարդ III», «Լիր արքա», ևն): Նկարահանվել է «Վերա թաղամասի մեղեդիները», «Ցանկության ծառը», «Սև արքայազնը», «Ուրախության տունը» և այլ ֆիլմերում: ԽՍՀՄ Պետ. մրց. (1979):

ՉԿԱԼՈՎ Վալերի Պավլովիչ (1904–1938), ռուս փորձարկող օդաչու, բրիգադի հրամ. (1938): ԽՄ հերոս (1936): Մշակել և ներդրել է բարձրագույն ինքնաթիռավարության մի շարք նոր ձևեր: 1936–37–ին օդաչուներ Գ. Ֆ *Բայդուկովի* և Ա. Վ. *Բելյակովի* հետ անվայրէջք թռիչք է կատարել Մոսկվա–Ուդ կղզի (Հեռավոր Արևելք) և Մոսկվա–Հս. բևեռ–Վանկուվեր (ԱՄՆ): Զոհվել է նոր կործանիչի փորձարկման ժամանակ:

ՉՀԱԳԵՑԱԾ ԱԾԽԱՋՐԱԾԻՆՆԵՐ, ոչ սահմանային ածխաջրածինները, մոլ–ում ածխածնի ատոմների միջև կրկնակի և եռակի կապ պարունակող ածխաջրածիններ: Մոլ–ում 1 կրկնակի կապ պարունակող Չ. ա. են ալկենները (էթիլեն, պրոպիլեն), 2 կրկնակի կապ պարունակողները կոչվում են դիենային ածխաջրածիններ (դիեններ), 3 և ավելի կրկնակի կապ պարունակողները՝ **պոլիենները**: Մոլ–ում 1 եռակի կապ պարունակող Չ. ա. ալկիններն են (*ացետիլեն*): Մոլ–ում միաժամանակ կրկնակի և եռակի կապեր պարունակող **Չ. ա. են ենինները** (օր.՝ դիվինիլացետիլենը): Չ. ա. ռեակցիոնունակ նյութեր են:

ՉՀՈՆՋԻՆ (Չհոնչժին), 1. ք. Կորեայի ԺԿՀ–ում, Հս. Համգեն պրովինցիայի վարչ. կենտրոնը, չսառչող նավինգստ է Ճապոն. ծովի ափին: Բն.՝ 330,2 հզ. (2010): 2. Ք. Կորեայի Հանրապետությունում, Հս. Չհունչհոն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 623,7 հզ. (2010): Ունի օդանավակայան: Կան բարձրտեխնոլոգ. ճյուղերի, քիմ. արդ–յան և այլ ձեռն–ներ:

ՉՀՎԵ ՆԱՄ ՄՈՆ (կեղծանունը՝ Յուկտան, 1890–1957), կորեացի բանաստեղծ, լուսավորիչ, պատմաբան: Ժամանակակից կորեական գրկ–յան հիմնադիրներից: Հեղինակ է «Հարյուր ութ խոովություններ» (1926) սիջո ժանրով գրած բանաստեղծությունների ժող–ի: Հավաքել է կորեական առասպելներ և ավանդություններ:

ՉՂՋԻԿՆԵՐ (Chiroptera), **թռչող մկներ**, ձեռնաթևավորների կարգի կաթնասունների ենթակարգ: Սարմնի երկ.՝ 2,5–14 *սմ*: Հայտնի է մոտ 700 տեսակ (17 ընտանիք): Թաքստոց են ծառայում քարանձավները, ծառերի փչակները, փլատակները, կառույցները ևն: Արձակում են տեղորոշման ազդանշաններ՝ 20–120 *կՀց* և 0,2–100 *մ/վ* տևողությամբ կարճ անդրաձայն. ազդակներ: Ոչնչացնում են վնասակար միջատներին: Որոշ տեսակներ վարակիչ հիվանդությունների փոխանցողներ են: 10 տեսակ և 3 ենթատեսակ գրանցված են ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՉՄՇԿԱԾԱԳ, **Հերապոլիս**, բերդավան *Ծոփք* նահանգ–ի Ծոփք Շահունի գվռ–ում՝ Արածանիի Թաղար վտակի արլ. ափին: Եղել է հեթանոս. գլխ. սրբատեղի, հետագայում՝ եպիսկոպոսանիստ կենտրոն: 1914–ին ունեցել է 2,5 հզ. հայ բն.: Չ–ի և շրջակա 20–ից ավելի գյուղերի հայերը (շուրջ 7,5–8 հզ. մարդ) տեղահանվել ու կոտորվել են Մեծ եղեռնի տարիներին:

ՉՄՇԿԱԾԱՂԻԿ, **աստղակամույկ** (Cypripedium), հս. Ամերիկայում տարածված խոլորձների 5 ցեղի անվանումը: Հայտնի է մոտ 150 տեսակ՝ Եվրասիայի արևադարձներում, մերձարևադարձներում և բարեխառն գոտիներում: Մի շարք տեսակներ գեղազարդիչ են: Բնության մեջ հազվագյուտ են, պահպանվում են:

ՉՄՇԿԱՊՈՐՏ, **չմշկավազք**, չմուշկներով վազք սառույցի վրա: Վազքատարածություններն են. կանանց համար՝ 500 *մ*, 1000 *մ*, 1500 *մ*, 3000 *մ*, 5000 *մ*, տղամարդկանց համար՝ 500 *մ*, 1000 *մ*, 1500 *մ*, 5000 *մ*, 10000 *մ*: Ձմեռ. օլիմպ. խաղերում ներառվել է 1924–ից: Աշխարհի առաջնություններն անցկացվում են՝ տղամարդկանց համար՝ 1893–ից, կանանց համար՝ 1936–ից: Եվրոպայինը՝ տղամարդկանց համար՝ 1893–ից, կանանց համար՝ 1970–ից: Չմշկորդների միջազգ. միությունում (ISU, հիմն.՝ 1892) ընդգրկված է 64 երկիր (2015):

ՉՄՇԿՅԱՆ Գևորգ Հարությունի (1837–1915), դերասան, ռեժ., թատեր. գործիչ: Արևելահայ պրոֆեսիոնալ թատրոնի հիմնադիր–առաջատարներից: Սաթենիկ *Չմշկյանի* ամուսինը: 1863–ից՝ Թիֆլիսի թատրոնում: Գ. Սունդուկյանի պիեսների առաջին բեմադրողն ու գլխ. դերակատարը (Պեպո, Օսեփ՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», «Քանդած օջախ», ևն): Այլ դերերից են՝ Շայլոկ (Վ. Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը»), Կառլ Մոոր (Ֆ. Շիլլերի «Ավազակներ») ևն: Հեղինակ է քննադատ–տես. հոդվածների, «Իմ հիշատակարանը» (1953) գրքի: Կատարել է թարգմ–յուններ (Վ. Շեքսպիր, Վ. Հյուգո):

ՉՄՇԿՅԱՆ Ռաֆայել Արկադիի (1929–2015), ծանրորդ: ԽՍՀՄ ս. վ. (1948), ս. վ. վ. (1952), միջազգ. կարգի մրցավար (1975): Օլիմպ. խաղերի (1952), աշխարհի (1954, 1955), Եվրոպայի (1950, 1952, 1954, 1955, 1956, 1957), ԽՍՀՄ (1949, 1951, 1954, 1955, 1956) չեմպիոն: Սահմանել է աշխարհի 12 ռեկորդ:

ՉՄՇԿՅԱՆ Սաթենիկ (Տեր–Աբրահամյան Եղիսաբեթ, 1849–1907/08), դերասանուհի: Արևելահայ պրոֆեսիոնալ թատրոնի հիմնադիրներից: 1883–ից հանդես է եկել որպես երգչուհի, ապա՝ ամուսնու՝ Գևորգ *Չմշկյանի* թատերախմբում: Ճանաչվել է բնութագր. և դրամատիկ. դերերով (Էփեմիա, Խամփերի՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», «Խաթաբալա», Շուշանիկ՝ Հ. Կարենյանի «Շուշանիկ», վրաց., Էմիլիա՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», ևն):

ՉՄՇԿՅԱՆ Վարդան Արսենի (1911–1984), հիդրոճարտարագետ: ՌԽՖՍՀ վաստ. ճարտարագետ: 1948–52–ին՝ Վոլգա–Դոն նավարկելի ջրանցքի շին–յան գլխ. ճարտարագետ, 1952–84–ին՝ ջրանցքի վարչության պետ: 2007–ին ջրանցքի տոնա–

կատարության 55–ամյակին կանգնեցվել է Չ–ի կիսանդրին: Նրա անունով կոչվել է խոշոր ջերմաքարշ:

Լենինի, ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքանշաններ:

ՉՄՈՒՇԿՆԵՐ, 1. սառույցի վրա սահելու մարզագույք: Սահում են սահաձողերի ստորին եզրերի վրա: Լինում են չմշկավազքի, գեղասահքի, հոկեյի, նաև զանգված. չմշկավազքի (այդ թվում՝ մանկ.) Չ.: 2. Անվաչմուշկները հատուկ պլաստիկ իրանի վրա ամրացված առանցքներով կառուցվածքներ են, որոնց վրա հագցված են (երկշարք գնդառանցքակալների վրա) 60 *մմ* տրամագծով ռետինե կամ պլաստիկե անիվներ: Լինում են միաշարք և երկշարք անվաչմուշկներ:

ՉԱՊԱՍ (Chiapas), նահանգ Մեքսիկայի հվ–արլ–ում: Տարածքը՝ 74,2 հզ. *կմ*^{2}, բն.՝ 5,2 մլն (2014): Վարչ. կենտրոնը՝ *Տուստլա Գուտյերես*:

ՉԱՂԿՅՈՒՐՅԱՆ (Չեղկյուրյան) Տիգրան (1884–1915), գրող, հաս. գործիչ: 1911–ին՝ *«Ուսկան»* եռամսյա հանդեսի հրտ. (Միքայել *Շամրանճյանի* հետ): Հեղինակ է «Հայրենի ձայներ» (1910) պատմվածքների ժող–ի, «Հերոսը» (1911) վիպակի, «Վանքը» (1914) վեպի, «Ճամբուս վրայ» ճամփորդ. նոթերի ժող–ի, Շիրվանզադեի մասին աշխ–յան:

ՉԱՂՈՒՆԻ Գորիմիր Գորիմիրովիչ (1923–2012), ռուս. մեխանիկոս: ՌԳԱ ակադ. (1981): Աշխ–ները վերաբերում են գազի դինամիկային, մեծ արագությունների աերոդինամիկային, ճայթյունի և այրման տեսությանը: ԽՍՀՄ (1972, 1978 1991), ՌԴ (2002) Պետ. մրց–ներ:

ՉԱՂՈՒՆԻԽ Վալենտին Կոնստանտինովիչ (1935–2012), ռուս. դրամատուրգ, սցենարիստ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1980): Հեղինակ է «Մարդն իր տեղում» (1972), «Երկրային սեր» (1974), «Սեփական կարծիք» (1977), «Հացի համը» (1979), «Մոսկվան արցունքների չի հավատում» (1980), «Կուլտարշավ դեպի թատրոն» (1983), «Սիրել ռուսական ձևով» (1995), «Մերոնք» (2004), «Մայիսյան չորս օր» (2011) և այլ կինոսցենարների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1980):

ՉԱՂՈՒԼՅՈՆԻՍ (Čiurlionis) Միկալոյուս Կոնստանտինաս (1875–1911), լիտվացի գեղանկարիչ, կոմպոզիտոր: Հեղինակ է խորհրդանշ. պատկերների («Արևի սոնատ», «Գարնան սոնատ», երկուսն էլ՝ 1907, «Պրելյուդ և ֆուգա», երկպատկեր, ևն): Հեղինակ է լիտվ. 1–ին սիմֆ. պոեմների («Անտառում», 1900, «Ծով», 1907, ևն), կամեր–գործիք. և այլ երկերի, մշակել է ժող. երգեր: 1965–ից Լիտվայում անցկացվում է Չ–ի անվ. դաշնակահարների մրցույթ:

ՉՈՔԱՆՅԱՆ Արամ (ծ. 1929), սրտաբան: Բժշկագիտ. դ–ր (1955), պրոֆ. (1971): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (1994): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (1994): 2003–05–ին՝ Բոստոնի համալսարանի նախագահ, 2005–ից՝ Մասաչուսեթսի բժշկ. հրտ–յունների կոմիտեի նախագահ: Աշխ–ները վերաբերում են արյան անոթի պատի բջջ. և մոլ. կառուցվածքների վրա հիպերտոնիայի և աթերոսկլերոզի ներգործության կանխման մեթոդների մշակմանը: Ամերիկ. բժշկ. ընկ–յան պատվ. (2000), ԵԳԱ (Բրյուսել, 2002) և միջազգ. մի շարք գիտ. ընկ–ների անդամ:

Ամերիկ. բժշկ. ընկ–յան մրց. (1993), ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան (1998), «Մխիթար Հերացի» մեդալ (2014):

ՉՈՔԱՆՅԱՆ Ժորա Արմենակի (ծ. 1944), քիմիկոս–օրգանիկ: Քիմ. գիտ. դ–ր (2005): Աշխ–ները վերաբերում են մետաղօրգ. միացությունների սինթեզին ու քիմ. փոխարկումներին, ինչպես նաև բնական ցածրմոլ. կենսակարգավորիչների (ֆերոմոններ, դեղանյութեր ևն) ստացման ու կիրառման հարցերին:

ՉՈՔԱՆՅԱՆ Կարապետ Սիրականի (1927–1978), մեխանիկոս: Աշխ–ները վերաբերում են համասեռ և անհամասեռ առաձգ. մարմինների առաձգականության խնդիրներին: Հայտնաբերել է թերլարվածության երևույթ (*Չորանյանի էֆեկտ*, 1971–ին գրանցվել է ԽՍՀՄ պետ. գրանցամատյանում), 1978–ին հաստատվել է որպես № 102–րդ գիտ. հայտնագործություն: 1999–ին ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստ–ում սահմանվել է Չ–ի անվ. մրց.:

ՉՈՔԱՆՅԱՆ Մարտուն Սուրենի (1933–2013), վիրուսաբան: Անասնաբուժ. գիտ. դ–ր (1990): Աշխ–ները վերաբերում են գղտ. կենդանիների և մորթատու գազանների համաճարակաբանության, տարբեր վարակիչ հիվանդությունների դեմ պատվաստանյութի մշակման, ներդրման խնդիրներին:

ՉՈՔԱՆՅԱՆ Նաիրա Սիմոնի (ծ. 1955), ուռուցքաբան: Բժշկ. գիտ. դ–ր: Աշխ–ները վերաբերում են երիտասարդ կանանց կաթնագեղձի չարորակ ուռուցքներին, օրգանիզմի հորմոն. վիճակի և իմունիտետի ներզատաբան. կարգավորմանը:

ՉՈՔԱՆՅԱՆ Պավել Աշոտի (1948–2017), պատմաբան, արևելագետ, խմբ.: Պատմ. գիտ. դ–ր (2004): 1999–2003–ին՝ «Պատմաբանասիրական հանդես»–ի խմբ–ի տեղակալ, 2013–17–ին՝ «Բանբեր հայագիտության» հանդեսի գլխ. խմբ.: Աշխ–ները վերաբերում են հայ–ռուս–վրաց. հարաբերություններին: Համահեղինակ է «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» (հ. 7, 8, 10–12, 1998–2004) բազմահատորյակի, հայոց պատմության դպրոց. դասագրքերի:

ՉՈՔԱՆՅԱՆ Սերգեյ Հակոբի (ծ. 1942), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1985), պրոֆ. (1996, Թբիլիսիի պետ. համալսարան): Նորմավորված տարածությունում բաղադրիչների տեղափոխության համար ստացել է ընդհ. առլզն անհավասարությունը, հետազոտել բանախյան տարածությունում հավանականության տեսության կենտր. սահման. թեորեմը, ուսումնասիրել անվերջ չափերի տարածություններում ստացիոնար պատահական շարժընթացները:

ՉՈՔԱՆՅԱՆ Վլադիմիր Արշալույսի (ծ. 1938), հրթիռահրետան. տեխնիկայի ընագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1985), պրոֆ. (1990): ՌԴ հրթիռահրետան. (1990) և ռազմ. (1998) ԳԱ–ների ակադ., գեն–լեյտ. (1995, գեն–մայոր՝ 1993): ՌԴ գիտ. և տեխնիկայի վաստ. գործիչ (1996): Աշխ–ները վերաբերում են խոշոր համակարգերի հուսալիության որոշման և վերահսկման մեթոդների մշակմանը, զինամթերքի հեռանկար. նմուշների շահագործման և շահագործ. բնութագրերի համակարգերի ընտրության մեթոդների հիմնավորմանը: «ԽՍՀՄ ՋՈՒ–ում հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 3–րդ աստիճանի շքանշան (1988):

ՉՈՔԱՆՅԱՆԻ ԷՖԵԿՏ, *թերլարվածության երևույթ*, բաղադրյալ մարմնի միակցման մակերևույթի եզրերում՝ նրանց զուգորդման որոշակի կոնֆիգուրացիայի դեպքում լարումների նվազագույն արժեքի առաջացման երևույթ: Հայտնագործել է Կարապետ *Չորանյանը* (1968–ին):

ՉՈՔԱՆՅԱՆՆԵՐ, մոնղ. բռնապետ. տոհմ Մերձ. Արևելքում (XIV դ.): Հիմնադիրն է Հուլավյան իշխանության զորահրամ. Չորանը, որն իլխան Աբու Սայիդի կառավարման (1316–35) 1–ին տարիներին եղել է երկրի փաստացի կառավարիչը: 1341–ին Հայաստանը նույնպես անցել է Չ–ին: 1357–ին *Ոսկե Հորդայի* տիրակալ Ջանիբեկ խանը պարտության է մատնել Չորանյան Մելիք–Աշրաֆին և սպանել նրան, որով ավարտվել է Չ–ի տիրապետությունը:

ՉՈՔԱՆՈՒ (Ciobanu) Իոն (1927–2001), մոլդավ գրող: Մոլդ. ԽՍՀ ժող. գրող (1984): Հեղինակ է «Կամուրջներ» (1966), «Կուկոռարա» (1975) և այլ վեպերի, «Ձայներ ջրի վրա» (1981) պատմվածքների ժող–ի: Մոլդ. ԽՍՀ Պետ. մրց. (1978):

ՉՈՓՈՒԻ, Դապսանգ, Կարակորումի ամենաբարձր գագաթը (8611 *մ*) Հնդկաստանի և Չինաստանի սահմանին: Կան խոշոր սառցադաշտեր (Բոլտորո ևն):

ՉՈԼԱԽՅԱՆ Գուրգեն Տիգրանի (1909–1972), արդ–յան կազմակերպիչ, պետ. գործիչ: ՀԽՍՀ վաստ. ճարտարագետ (1964): Իզա *Չոլախյանի* հայրը: Եղել է ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ (1941–45 և 1963–66), ՀԽՍՀ Կառ–յան մշտ. ներկայացուցիչը Մոսկվայում (1945–47), Երևանի էլեկտրամեքենաշին. գործարանի տնօրեն (1948–55), Միկրոէլեկտրոնիկայի ԳՀ տեխնոլոգ. ինստ–ի հիմնադիր տնօրեն (1966–74): Երևանի քաղխորհրդի նախագահ (1955–57):

ՉՈԼԱԽՅԱՆ Իզա Գուրգենի (ծ. 1936), ճարտ.: Գուրգեն *Չոլախյանի* դուստրը, Հրաչյա *Պողոսյանի* կինը: Համահեղինակ է Երևանում՝ ՀայէՆերգոցանցշինտրեստի շենքի (1960), Սպիտակում՝ բնակելի տների (1998) և այլ նախագծերի, հեղինակ՝ արվ–ի մի շարք գործիչների հուշաքարերի ևն:

ՉՈԼՈՔՅԱՆ Հակոբ Սարտայի (ծ. 1947), ազգագրագետ, պատմաբան, մատենագետ: Պատմ. գիտ. դ–ր (2016): Հեղինակ է «Հալէպի պարբերական մամուլի համառօտ նկարագրութիւն» (1978), «Արցախեան ինքնաճանաչման բանաստեղծութիւնը» (1990), «Քեսապ» (հ. 1–3, 1995–2004), «Քարէն Եփփե. հայ գողգոթային եւ վերածնունդին հետ» (2001), «Անտիոքի մերձակայ Ռուճի հովիտի հայերը...» (2002) և այլ աշխ–ների, «Քեսապի երեք օրերը...» (2014) վավերագրության, նաև բանաստեղծությունների:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2011):

ՉՈԼՈ (Աբրահամյան Հարություն, 1878–1937), ազգ–ազատագր. շարժման գործիչ, ֆիդայի: Մասնակցել է 1899–ի Սպաղանքի, 1904–ի և 1915–ի Սասունի ինքնապաշտպ. մարտերին, 1921–ի Փետր. հակախորհրդ. ապստամբությանը, այնուհետև անցել է արտերկիր, 1927–ին վերադարձել է ՀԽՍՀ (Թալին): Անհատի պաշտամունքի զոհ, մահացել է բանտում:

ՉՈՒԽՈՎ Անդրեյ (մոտ 1545–1629), ռուս ձուլագործ, թնդանոթների և զանգերի վարպետ: 1586–ին ձուլել է «Ազքա–թնդանոթը»:

ՉՈՅԲԱԼՍԱՆ Խոլդգին (1895–1952), ՄԺՀ մարշալ (1936): Վարչապետ՝ 1939–ից, Մոնղոլիայի ժողովրդահեղ. կուս–յան հիմնադիրը (1921): 1924–28–ին՝ Մոնղոլիայի բանակի գլխ. հրամ., 1931–35–ին՝ ԱԳ նախարար, 1935–39–ին՝ ՄԺՀ փոխվարչա–

պետ: Չ–ի գործունեությունը դատապարտվել է որպես զանգված. բռնությունների և անիշխանության դրսևորում:

ՉՈՆԲՈՒՐԻ, ք. Թաիլանդում՝ Սիամ. ծոցի մոտ, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 203 հզ. (2010):

ՉՈՆԳՈՒՐ, վրաց. քառալար կսմիթ. երաժշտ. գործիք: *Լյուրնիայի* տեսակի:

ՉՈՆԿԱՉԵ Դանիել Գեորգիի (1830–1860), վրացի գրող: Հեղինակ է ճորտատիրության դեմ «Սուրամի ամրոցը» (1859, կինոնկար՝ 1984՝ «Սուրամի ամրոցի լեգենդը», ռեժ.՝ Սերգեյ Փարաջանով) ռեալիստ. վիպակի:

ՉՈՆՋՈՒ, ք., Կորեայի Հանրապետության Հս. Չոլա պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 730,3 հզ. (2010): Արհեստ. կաուչուկի արտադր–յան խոշոր կենտրոն:

ՉՈՊԱՆՅԱՆ Արշակ Հովհաննեսի (1872–1954), գրող, քննադատ, լրագրող, հրտխմբ.: 1895–ին՝ Կ. Պոլսի *«Ծաղիկ»* պարբ–ի խմբ.: 1898–1911–ին՝ Փարիզի *«Ազատիտ»* (նոր շրջան՝ 1929–49, նաև հրտ.) գր–գեղ. հանդեսի հիմնադիր–խմբ., 1917–19–ին՝ *«Վերածնունդ»*, 1921–24–ին՝ *«Ապագայ»* թերթերի խմբ.: Հեղինակ է «Արշալոյսի ձայներ» (1891), «Քերթուածներ. 1889–1907» (1908) բանաստեղծությունների ժող–ների, «Թուղթի փաթք» (1892) վիպակի, «Տղու հոգիներ» (1923) պատմվածքների և պատկերների ժող–ի, «Պետրոս Դուրեան...» (1894), «Մկրտիչ Պեշիկթաշլեանի կեանքն ու գործը» (1907) աշխ–ների, «Նահապետ Քուչակի դիւանը» (1902), «Հայրէ՛ններու բուրաստանը» (1940) քննադատ. և բանասիր. երկերի, «Դէմքեր» (հ. 1, 2, 1924, 1929) հայ գրող–ների գր. դիմանկարների, «Վարդենիք Հայաստանի» (հ. 1–3, 1918–29) ժող–ների և այլ գործերի: Չ. առաջինն է վերլուծել Գրիգոր Նարեկացու ժառանգությունը՝ որպես գեղ. ստեղծագործություն:

ՉՈՊԻՉ Բրանկո (1915–1984), սերբ գրող: Հեղինակ է 1941–45 թթ–ի սերբերի ազգ–ազատագր. պատերազմի մասին «Ճեղքում» (1952), «Քողարկված վառոդ» (1957), «Պարտիզանները Բիհաչում» (1975), հետպատերազմ. շրջանի մասին «Մի՛ տխրիր, բրոնզէ՛ պահակ» (1958), «Ութերորդ հարձակումը» (1964) վեպերի: Հայ. հրատարակվել է «Ելուզակ Յովեցը» (1965) պատմվածքների ժող–ը:

ՉՈՍԵՐ (Chaucer) Ջեֆրի (մոտ 1343–1400), անգլիացի բանաստեղծ: Համաանգլ. գր. լեզվի հիմնադիրը: Հեղինակ է ֆրանս. ասպետ. գրկ–յան ազդեցությունը կրող «Դքսուհու գիրքը» (1369), «Թռչունների խորհրդարան» (1382) երգիծ. պոեմների, «Թրոիլուս և Քրիզեիդ» (մոտ 1385, սյուժեն փոխառել է Ջ. Բոկկաչոյի «Ֆիլոստրատո» պոեմից) չափածո վեպի, «Քենթբրերյան պատմվածքներ» (1380–ական թթ–ի վերջ, հրտ.՝ 1478) չափածո ժող–ի:

ՉՈՄԻՉ Դորբիցա (1921–2014), սերբ գրող, քաղ. գործիչ: Սերբ. ազգ. շարժման տեսաբան: Հեղինակ է XIX դ–ի վերջին Սերբիայի սոցիալ–քաղ. կյանքը պատկերող «Արմատներ» (1954), Ա.Հ.Պ–ի մասին «Մեռնելու ժամանակը» (հ. 1–4, 1972–79), Ե.Հ.Պ–ի մասին «Արևը հեռու է» (1951), «Բաշխումներ» (1961) վեպերի, «Չարիքի ժամանակը» (1985–90) եռերգության:

ՉՈՏՈՊԱՏՀԱՅ Բոնսկիմչոնդրո (1838–1894), հնդիկ բենգալալագիր գրող: Հեղինակ է «Թունավոր ծառ» (1872), պատմ. թեմաներով «Ռոջոնի» (1877), «Սահիբը եկավ» (1873), «Երջանկության օթևան» (1882) և այլ վեպերի, նաև սատիր. նովելների:

ՉՈՐ ԿԱԹ, կաթի փոշի: Ստանում են նախապես խտացրած կաթի չորացումով: Լուծում են (վերականգնում) տաք ջրում (38–45 °C): Տարբերում են անքաշ (2,5 % յուղ) և յուղազրկված (1 % յուղ) տեսակներ: Անքաշ Չ. կ–ի 100 *գ*–ի էներգ. արժեքայնությունը՝ 2,2 *մՋ*:

«ՉՈՐ ՍԱՌՈՒՅՑ», ածխածնի պինդ երկօքսիդը (CO_2): Սպիտակ բյուրեղ. նյութ է, նման է սառույցի: Սովոր. պայմաններում սուրլիմվում է, գոլորշիանում 78,5°C–ում՝ առանց հեղուկանալու: Օգտագործում են սննդարդ–յան և մեքենաշին–յան մեջ:

«ՉՈՐ ՍՊԻՐՏ», պինդ անծուխ վառելանյութ: Ստանում են որոշ փոշենման օրգ. միացությունների մամլումով: Կենցաղում առավել մեծ կիրառություն ունի հեքսամեթիլենքառամինի (ուրոտրոպինի) հիմքով «Չ. ս.»:

ՉՈՐԱԹԱՆ, ուտեստ: Պատրաստում են թանից՝ քամելով կամ գոլորշացնելով: Ստացված մածուկը (գնդիկների ձևով) չորացնում են արևի տակ: Օգտագործում են ջրի մեջ տրորելով, վերածում հեղուկի (թանի), պատրաստում թանապուր ևն:

ՉՈՐԱՆ (Cioran, Սիորան) Էմիլ Միշել (1911–1995), ռումին գրող: 1937–ից՝ Ֆրանսիայում: Գրել է ֆրանս.: Հեղինակ է «Անկման դասեր» (1949), «Գոյատևելու գայթակղությունը» (1956) հոռետես. էսսեների և աֆորիզմների, «Պատմություն և ուտոպիա» (1960) աշխ–յան, «Ակնարկ հետադիմական մտքի» (1977) փիլ. ակնարկի, «Հիացմունքի փորձեր» (1986) գր. դիմանկարների ժող–ի:

ՉՈՐԱՍԵՐ ԲՈՒՅՍԵՐ, **քսերոֆիտներ** (< հուն. xeros – չոր և phyton – բույս), չոր վայրերին հարմարված բույսեր: Կան մի քանի տիպեր. սուկուլենտներ՝ ջերմադիմացկուն են, սակայն չեն դիմանում ջրազրկմանը (ագավա, հալվե, կոզիներ), կիսաչորասերներ (կիսաքսերոֆիտներ)՝ չեն դիմանում երկարատև ջրազրկմանը, արմատ. համակարգը հասնում է գրունտ. ջրերին (եղեսպակ, սիբեխ, կարմրան), իսկական Չ. բ. (էվքսերոֆիտներ)՝ արմատները խորը չեն, աճում են խոնավության մշտ. կամ սեզոն. պակասի պայմաններում (փետրախոտ, օշինդր, լերդախոտ, բրոբակաթուփ, կալիախոտ, աղապատուկ, ցմախ): Պոյկիլոքսերոֆիտներն ընդունակ են դիմանալու ամենախիստ չոր. պայմաններին, ընկնում են կենսադադարի (անաբիոզ) մեջ, բարենպաստ պայմաններում վերականգնվում: Հ.Հ–ում տարածված Չ. բ–ից են քարաքոսերը, կապտականաչ ջրիմուռները ևն:

ՉՈՐԱՍԵՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ, **քսերոֆիլ կենդանիներ**, ցամաք. կենդանիներ, որոնք ապրում են օդի ցածր խոնավության պայմաններում (օր.՝ ճագարամկները, ավազամկները, բազմաթիվ մողեսներ, որոշ կրիաներ, մորեխներ ևն):

ՉՈՐԴՎԱՆ, **Չորրորդ վանք**, IX դ–ի ճարտ. համալիր Տայքում՝ Ճորոխ գետի ափին: Նորոգվել է և հարդարվել Դավիթ *Կուրապաղատի* օրոք: Բոլոր ճակատներում դեկորատիվ կամարաշարով եռանավ բազիլիկ է, նավերն իրարից բաժանվում են 2 շարք 4–ական մույթերով, որոնց միացնող կամարների վրա բարձրանում են երկայն. պատեր: Խորանում պահպանվել են որմնանկարներ, արձանագրությունների մնացորդներ:

ՉՈՐԵՔՉՅԱՆ Թորգոմ Ստեփանի (1910–1977), քանդ.: ՀԽՄՀ վաստ.նկարիչ (1963): Հեղինակ է Վիկտոր Համբարձումյանի, Մ. Թումանյանի (երկուսն էլ՝ 1952, ՀԱՊ), Գ. Լևոնյանի (1944, Գավառի դրամատիկ. թատրոն), Դ. Վարուժանի (1972, Երևանի համանուն դպրոցի առջև) և այլ դիմաքանդակների:

ՉՈՐՍԱՉՓԱՆԻ ՁԿՆԵՐ, ծածանատամ–նակերպների կարգի քաղցրահամ ջրերի ձկների ընտանիք: Երկ.՝ մինչև 30 *սմ*: Հայտնի է 2 տեսակ՝ Կենտր. և Հվ. Ամերիկայի հս–ում՝ ծովալճակներում: Աչքերը բաժանված են էպիթել. միջնորմով (այստեղից՝ անվանումը), վերին մասը հարմարված է վերջրյա տեսողությանը: Մսվում են մանր անողնաշարներով, այդ թվում՝ օդում թռչող միջատներով:

«ՉՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ», հաս–քաղ. օրաթերթ (1999–ից, Երևան, մինչև 2009–ը՝ «Չորրորդ իշխանություն»): Հիմնադիր–խմբ.՝ Շողեր Սաթևոսյան:

ՉՈՐՐՈՐԴԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ, **անթրոպոգեն**, Երկրի շերտագր. սանդղակի և երկրբ. պատմության վերջին, ցայսօր շարունակվող ժամանակաշրջանը: Հաջորդել է *նեոգենին:* Տևողությունը՝ մոտ 1,8 մլն տարի: Առանձնացնում են Չ. ժ–ի ստորին (պլեյստոցեն) և վերին (հոլոցեն) բաժիններ: Ռելիեֆը, կլիման, բուս. ու կենդ. աշխարհները Չ. ժ–ում ստացել են ժամանակակից տեսքը, Չ. ժ–ում է առաջացել մարդը: Հ.Հ–ում ներկայացված է ցամաք. ֆացիաներով՝ դարավանդ., լճագետ., սառցադաշտ. նստվածքներով:

ՉՈՐՈՒՄ (Çorum), ք. Թուրքիայում՝ Անատոլիայի կենտր. մասում, համանուն վիլայեթի վարչ. կենտրոնը: Բն.՝ 218 հզ. (2009):

ՉՎԱՆՄԱՄՈՒԻ (Funaria), չվանմամուռազգիների ընտանիքի տերևացողուն. մամուռների ցեղ: Հայտնի է 80 տեսակ, Հ.Հ–ում՝ 2՝ Սյունիքի, Արարատի մարզերում, Երևանի շրջակայքում:

ՉՐԱՔՅԱՆ Արթին պեյ (1800–1859), պետ. գործիչ: Եղել է Եգիպտոսի կառավարիչ Մուհամմեդ Ալիի կաբինետի վարիչը: 1844–50–ին՝ Եգիպտոսի ՍԳ և առևտրի նախարար: Անգլիացիների սադրանքով հեռացվել է պաշտոնից, անցել արտերկիր: Եգիպտոսի նոր կառավարիչ Սայիդի օրոք (1854–63) վերադարձել է և 1854–ին նշանակվել նրա խորհրդական: Պաշտոնից հեռացվել է՝ օտարերկրյա կոնցեսիաներ տրամադրելու հարցում Սայիդին հակադրվելու մեղադրանքով:

ՉՐԱՔՅԱՆ Տիրան Գասպարի, **Ինտրա** (1875–1921), բանաստեղծ, քննադատ, փիլ.: 1915–ին ձերբակալվել է, աքսորվել, բայց կաշառքով փրկվել է վերահաս մահից, 1921–ին նորից է ձերբակալվել և արտաքսվել Դիարբեքիր. ճանապարհին նահատակվել է: Հեղինակ է «Ներաշխարհ» (1906) արձակ պոեմի, «Ներաշխարհին իր հեղինակէն դիտուած» (1906), «Կարծիքներ եւ կարծողներ» (1908) հոդվածների, «Նոճաստան» (1908) սոնետների ժող–ների, էսսեների, ճամփորդ. ակնարկների, պատկերների: Ադանայի ջարդերից (1909) հետո խանգարվել է նրա հոգեկան ներաշխարհը, այրել է իր գրքերն ու անտիպ ձեռագրերը:

ՉՐԽԿԱՆՆԵՐ (Elateridae), բզեզների ընտանիք: Երկ. սովորաբար՝ 7–20 (երբեմն՝ մինչև 50) *մմ*: Հայտնի է մոտ 10 հզ. տեսակ՝ Եվրասիայում և Ամերիկայում:

Թրթուրները (լարաթրթուրներ) վնասում են արմատները:

ՉՈՒ (Chu) Սթիվեն (ծ. 1948), ամերիկացի ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են լազեր. ֆիզիկային, լազեր. ճառագայթմամբ ատոմների սառեցմանը և կանգառքին: Նորելյան մրց. (1997, Ու. *Ֆիլիպսի* և Կ. *Քոհեն-Տանուջիի* հետ):

ՉՈՒ, գետ Ղրղզստանում և Ղազախստանում: Երկ.՝ 1067 *կմ*, ավազանը՝ 71,6 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը ստորին հոսանքում՝ 20,4 *մ*^{3}/*վ*: Կազմավորվում է Տյան Շանում՝ Քոչքոր և Ժոնարիկ գետերի միավորմամբ, հոսում է Իսիկ-Կուլի գոգհովտով, Չ–ի հովտով, հատում է Մույիկում անապատը և կորչում Աշիկոլ իջվածքում:

ՉՈՒԲԱՐ (Չուբարյան) Գևորգ Հովհաննեսի (1864–1930), դերասան, թարգմանիչ, գրող: Ճանաչվել է բնութագր. դերերով՝ Ֆրանց Մոոր (Ֆ. Շիլլերի «Ավազակներ», ևն): Դոնի Ռոստովի Պ. Ադամյանի անվ. թատրոնի հիմնադիրներից (1922) է: Հեղինակ է պիեսների («Սանդուխտ», «Ոսկի և սեր», «Հրդեհ» ևն), օպերետների («Մարո», «Արևելքի աստղը» ևն), արձակ գործերի («Փշրված կյանք»):

ՉՈՒԲԱՐ Եղիա Գասպարի (1897–1938), խմբ., հրապարակախոս: 1921–36-ին՝ «Երևան», «Վերելք», «Ցոլք» (երեքն էլ՝ Փարիզ), «Խարիպկիթ» (Դոնի Ռոստով), «Խորհրդային Հայաստան», «Աղքատ գյուղացի», «Լենինյան ուղի», «Կարմիր գութան», «Կոմունիստ», «Հոկտեմբեր-նոյեմբեր», «Մաճկալ» (տարեգիրք), «Նոր ակոս», «Նոր ուղի», «Վերելք» (բոլորն էլ՝ Երևան) և այլ պարբ-ների խմբ.: Հեղինակ է «Սկզբում» (1926) հուշերի ժող–ի:

ՉՈՒԲՈՒՔՅԱՆ Ալեքսանդր Օհանի (ծ. 1931), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1970): ՌԳԱ ակադ. (2000, թղթ. անդամ՝ 1994–ից): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (2000): Օհան *Չուբարյանի* որդին: 1988–ից՝ ՌԳԱ ընդհ. պատմության ինստ–ի տնօրեն, 1994–ից՝ նաև Հումանիտար գիտ–յունների պետ. ակադ–ի ռեկտոր: Մի շարք պարբ-ների գլխ. խմբ.: ՌԴ նախագահին կից գիտ–յան, տեխնոլոգիաների և կրթության խորհրդի անդամ (2001–12): Աշխ-ները վերաբերում են Եվրոպայի XIX–XX դդ–ի պատմության հիմնախնդիրներին, մի–ջազգ. հարաբերությունների օրինաչափություններին, օրենսդր. հիմնահարցերին: ՌԴ պատմաբանների ազգ. կոմիտեի և Եվրոպայի նորագույն պատմության միջազգ. ընկ–յան փոխնախագահ (1973), ՌԴ պատմաբան-արխիվագետների միության նախագահ (1996–2006):

ՌԴ Պետ. մրց. (2013), ԽՍՀՄ «Պատվո նշան», ՌԴ «Պատվո», Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» (2005), Վատիկանի «Սբ Գրիգոր Մեծ» շքանշաններ, ՀՀ ԳԱԱ ոսկե մեդալ (2009):

ՉՈՒԲՈՒՔՅԱՆ Գրիգոր Համբարձումի (1888–1962), իրավաբան, հաս., քաղ. գործիչ: ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): Ղուկաս *Չուբարյանի* հայրը: Մասնակցել է ՀԽՍՀ առաջին սահմանադրության նախագծի կազմմանը, տարբեր օրենսդրական իրավ. ակտերի և դեկրետների նախագծերի մշակմանը: Ռուս–հայ. իրավաբ. բառարանի (1924) համահեղինակ: 1937–ին բռնադատվել է, աքսորվել, 1956–ին արդարացվել է: Աշխ-ները ոչնչացվել են:

ՉՈՒԲՈՒՔՅԱՆ Էդուարդ Վարդանի (ծ. 1936), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1973), պրոֆ. (1975): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1988–ից): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (1996): ԵՊՀ ռեկտոր (2006): Աշխ-ները վերաբերում են գերխիտ երկնամարմինների ֆիզիկային, գնդային և առանցքահամաչափ բաշխում ունեցող զանգվածների ձգողության էյնշտեյնյան հավասարումներին, ձգողության երկչափ տեսության հարցերին:

ՀԼԿԵՄ մրց. (1970), ԵՊՀ ոսկե, Ֆրիտյոֆ Նանսեն հիմնադրամի մեդալներ:

ՉՈՒԲՈՒՔՅԱՆ Ղուկաս Գրիգորի (1923–2009), քանդ.: ՀԽՍՀ ժող. նկարիչ (1972): Պրոֆ. (1978): ՌԴ գեղարվ–ի ակադ–ի ակադ. (1988): Գրիգոր *Չուբարյանի* որդին: Հեղինակ է դիմաքանդակների («Մ. Սարյան», 1967, «Կոմիտաս», 1977, ևն), արձանների, մոնումենտալ գործերի («Մեսրոպ Մաշտոց», 1960–68, «Մխիթար Գոշ», 1967, երկուսն էլ՝ Մտնդ–ի առջև), դիմաքանդակ. և ֆիգուրատիվ հուշարձանների («Ե. Չարենց», 1957, «Ա. Սպենդիարյան», 1957, համահեղ.՝ Արա *Սարգսյան*, երկուսն էլ՝ Երևան, «Հ. Թումանյան», 1969, Դսեղ, 1987, ևն), ՀՀ Կառավար. 2–րդ տան և ՀԱՄԽ–ի շենքի դեկորատիվ քանդակների (1950–ական թթ.), «Լույս իջնի վրադ» (1987) հորինվածքի և այլ գործերի:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2003):

ՉՈՒԲՈՒՔՅԱՆ Պողոս Խաչատուրի (1878–1920), հաս–քաղ. գործիչ, իրավաբան: 1917–ին՝ երդվյալ հավատարմատար Բաքվի նահանգ–ում: Ադրբեջանի Հանրապետության մեջլիսի պատգմ., Ղարաբաղի հայությանն ահաբեկելու նպատակով իրագործված Ղայբալի գ–ի (այժմ՝ Լ.Ղ.Հ Շուշիի շրջանում) կոտորածն ուսումնասիրող պատգամավոր. խմբի պատասխանատու: Բոլշևիկները գնդակահարել են Ադրբեջանի խորհրդայնացման օրերին:

ՉՈՒԲՈՒՔՅԱՆ Օհան Ստեփանի (1908–1976), գրադարանագետ-մատենագետ, խմբ.: Մանկավարժ. գիտ. դ–ր (1972), պրոֆ. (1973): ՌԽՖՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1968): Ալեքսանդր *Չուբարյանի* հայրը: 1964–75-ին՝ «ԽՍՀՄ գիտական և տեխնիկական գրադարանները», 1973–ին՝ «Խորհրդային գրադարանավարություն» (երկուսն էլ՝ ռուս.) պարբ-ների խմբ.:

ՉՈՒԲՐԻԼՈՎԻՉ (Čubrilović) Վասո (1897–1990), սերբ պատմաբան: Սերբիայի գիտ–յունների և արվ–ների ակադ–ի ակադ. (1961), ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1976): 1967–ից՝ Սերբիայի գիտ–յունների և արվ–ների ակադ–ի բալկանագիտ–յան ինստ–ի տնօրեն: 1914–ին Սարաևոյում Ֆրանց Ֆերդինանդի սպանության մասնակից: ԵՀՊ–ի ժամանակ եղել է համակենտրոնացման ճամբարում (Բանիցա): Աշխ-ները վերաբերում են Բոսնիայի և Հերցեգովինայի, Սերբիայի, Խորվաթիայի միջնադար. և նոր պատմությանը:

ՉՈՒԳԱԵՎ Լև Ալեքսանդրովիչ (1873–1922), ռուս քիմիկոս, կոմպլեքս միացությունների քիմիայի հիմնադիրը: Գտել է նիկելի հայտնաբերման ռեակտիվը (1905, Չ–ի ռեակտիվ): Մշակել է (1899) չհագեցած ածխաջրածինների սինթեզի եղանակ (Չ–ի ռեակցիա): Վ. Ի. Լենինի անվ. մրց. (1927, հետմահու):

ՉՈՒԳԱՍՅԱՆ Բարկեն Լևոնի (1923–1997), բանասեր-արևելագետ: Բանասիր. գիտ. թեկնածու (1962): ՀՀ մշակույթի վաստ. աշխատող (1984): Լևոն *Չուգասյանի* հայրը: 1965–94-ին՝ Մտնդ–ի փոխտնօրեն: Հեղինակ է «Հայ-իրանական գրական առնչություններ (V–XVIII դդ.)» (1963), «Խրատք Նուշիրուանի» (1966), «Գէորգ Դպիր Պալատեցու կեանքի եւ գործունէութեան տարեգրութիւն. 1737–1811» (1994) աշխ-ների, «Հայրենադարձ իրանահայ դեմքեր» (1997) կենսագր. բառարանի: Հայտնաբերել և հրտ–յան է պատրաստել Հովհաննես Սեբաստացու «Պատմութիւն Սեբաստիոյ» (1974), «Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ. ԺԹ դար» (1980) աշխ-ները:

ՉՈՒԳԱՍՅԱՆ Լիլի Վահանի (1920–2012), երգչուհի (կոնտրալտո): 1959-ին հանդես է եկել Լիթլ Ռոքի (Արկանզաս նահգ, ԱՄՆ) օպեր. թատրոնում, ապա՝ Չիկագոյում, Նյու Յորքում, 1961-ին՝ Սպոլետտոյի (Իտալիա) փառատոնում: 1962-ից՝ Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերայի» (Նորմա՝ Վ. Բելլինիի «Նորմա», Ամներիս, Ազուչենա՝ Ջ. Վերդիի «Աիդա», «Տրուբադուր», ևն), 1967-ին՝ ԵՕԹ–ի մեններգչուհի: Համագործակցել է Հ. Ֆոն Կարայանի, Լ. Ստոկովսկու, Լ. Բեռնստայնի և ուր. հետ: Օժտված էր բացառիկ ձայնածավալով, բեմ. ինքնատիպ ձիրքով: ՀՀ ՄՆ Պետրոս Ադամյանի անվ. մրց. (1981):

ՉՈՒԳԱՍՅԱՆ Լևոն Բարկենի (ծ. 1952), արվեստաբան, մանկավարժ: Արվեստագիտ. դ–ր, պրոֆ. (2001): ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2012): Բարկեն *Չուգասյանի* որդին: Միլանի «Ամբրոզիանա» ակադ–ի (2015), Մոնպելիեի ակադ–ի թղթ. (2016) անդամ: Հեղինակ է «Գրիգոր Ծաղկող» (1986), «Արշակ Ֆեթվաճյան» (2011), «Հայ միջնադարյան կերպարվեստի ուսումնասիրության պատմություն (1830–ական թթ.–1950 թ.)» (2016) գրքերի:

ՉՈՒԳՈՒՉԱԿԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1864, Ռուսաստանի և Չինաստանի միջև սահմանի հաստատման վերաբերյալ՝ համաձայն 1860-ի Պեկինի տրակտատի: Ստորագրվել է Չուգուչակում (Տաչեն): Սահմանաբաժանումն սկսվել է 1869–70-ին՝ հատուկ արձանագրությունների ստորագրումից հետո:

ՉՈՒԴԱԿՈՎ Ալեքսանդր Եվգենևիչ (1921–2001), ռուս. ֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (1987): Ե. Ա. *Չուդակովի* որդին: Աշխ-ները վերաբերում են տիեզ. ճառագայթների ֆիզիկային և տարր. մասնիկներին: Հայտնաբերել է (Ս. Ն. *Վերնովի* հետ) Երկրի արտաքին ճառագայթ. գոտին: Մշակել է ԵԱԱ–ներով տիեզ. ճառագայթների գրանցման սարքեր, տիեզ. նեյտրոնների և մյուոնների դետեկտորներ: Լենինյան (1960), ՌԴ Պետ. (1998) մրց–ներ:

ՉՈՒԴԱԿՈՎ Եվգենի Ալեքսանդրովիչ (1890–1953), ռուս. մեխանիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939, փոխնախագահ՝ 1939–42): Ա. Ե. *Չուդակովի* հայրը: Աշխ-ները վերաբերում են ավտոմոբենաների տեսությանը, մեքենամասերի ամրության և մաշման հարցերին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943, 1951):

ՉՈՒԴՈ-ՊՍԿՈՎԻ ԼԻՃ, Էստոնիայում և ՌԴ Պսկովի մարզում: Մակերեսը՝ 3550 *կմ*^{2}, խոր.՝ մինչև 15 *մ*: Կազմված է Չուդի (2670 *կմ*^{2}), Պսկովի (710 *կմ*^{2}) լճերից և նրանց միացնող Տյոպլոյե (170 *կմ*^{2}) նեղուցից: Սառցադաշտ. ջրամբարի մնացուկ է: Լիճ է թափվում մոտ 30 գետ (խոշորներն են Վելիկայան, Էմայիգին), արտահոսում է Նարվան: 1242-ին լճի հվ. մասում, սառույցների վրա, տեղի է ունեցել ճակատամարտ՝ ռուս. զորքերի և գերմ. ասպետների միջև:

ՉՈՒԻ ՄԱՐՋ, Ղրղզստանում: Տարածքը՝ 18,7 հզ. *կմ*^{2}, բն.՝ 815 հզ. (2011): Վարչ. կենտրոնը՝ Կարա Բալտա:

ՉՈՒԻ ՏԱՓԱՍՏԱՆ, միջլեռն. գոգհովիտ Ալթայում՝ Չու գետի վերին հոսանքում: Բարձր.՝ 1750–2200 *մ*: Երկ.՝ շուրջ 70 *կմ*: Արոտավայր է: Չ. տ–ով է անցնում Չուի ընթացուղին (տրակտը):

ՉՈՒԼԿՈՎ Գեորգի Իվանովիչ (1879–1939), ռուս գրող: Հեղինակ է «Առեղծվածային անարխիզմի մասին» (1906) աշխ–յան, «Սատանա» (1915), «Ձյունամրրիկ» (1917) վեպերի, «1825 թվականի խռովարարները» (1925), «Կայսրեր» (1928) պատմ. գրքերի, նաև բանաստեղծությունների, պատմվածքների ժող–ների, «Ուղևորությունների տարիներ» (1930) հուշագրության, Ֆ. Ի. Տյուտչևի, Ֆ. Մ. Դոստոևսկու մասին պատմագր. երկերի:

ՉՈՒԼԿՈՎ Միխայիլ Դմիտրևիչ (1743–1792), ռուս գրող, պատմաբան, ազգագրագետ, տնտեսագետ: Կազմել է «Տարբեր երգերի ժողովածու»–ն (հ. 1–4, 1770–74), «Ռուսական անահավատությունների արեվեգա–ն...» բառարանը (1786): Հեղինակ է «Գեղեցիկ խոհարարուհին...» (1770) խարերայապատում վեպի, նաև հեքիաթների և այլ գործերի, «Ռուսական առևտրի պատմական նկարագիրը...» (գիրք 1–7, 1781–88) աշխ–յան:

ՉՈՒԼՈՅԱՆ Բեռնարդ Պիեռի (ծ. 1953), մարզիկ (ձյուդո): Օլիմպ. խաղերի բրոնզե մրց. (1980), Եվրոպայի (1980, 1981), աշխարհի (1981) չեմպիոն: 1988–ի Սպիտակի երկրաշարժից տուժածներին օգնելու նպատակով 1989–ին Փարիզում Չ. աճուրդի է հանել իր նվաճած մեդալները, որոնք կազմակերպիչ Շ. *Ազնավուրը* գնել և վերադարձրել է նրան:

ՉՈՒԼՈՅԱՆ Ժիրայր Էդուարդի (1918–1992), նկարիչ, ոսկերիչ–արծաթագործ: 1961–ից՝ Երևանի գեղարվ–ի կոմբինատի գլխ. նկարիչ: Հեղինակ է արծաթե և ոսկե պերճանքի բարձրարվ. իրերի («Զարթոնք», սկուտեղ, 1967, Վազգեն Ա–ի շքեղ պնակեն, 1959, աղամանդակուռ, ոսկետառ «Հայոց այբուբենը», 1976, «Խաչը», 1979, ևն):

ՉՈՒԼՊԱՆ (Աբդուլհամիդ Սուլեյման օղլի Յունուսով, 1893–1937), ուզբեկ գրող: Հեղինակ է «Աղբյուրներ» (1924), «Արևածագի գաղտնիքները» (1926) բանաստեղծությունների ժող–ների, «Գիշեր ու զոր» (1936) վեպի, «Բռունցք», «Ընկեր Կարշիբաևը» (երկուսն էլ՝ 1928) և այլ երգիծ. պիեսների: Անհիմն բռնադատվել է:

ՉՈՒՄ, տղամարդու վերնազգեստ: Առանց օձիքի, վերևի մասը՝ կիպ, գոտկատեղում՝ շարով կամ դարսերով կարված, ծնկներից քիչ ներքև աստիճանաբար լայնացող կապա է, եզրերին՝ տրեզներ, երկար ու լայն թևերով:

ՉՈՒԽՎԱՀՅԱՆ Տիգրան Գևորգի (1837–1898), կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ, հաս. գործիչ: Հայկ. օպեր. արվ–ի հիմնադիրը («Արշակ Բ», 1868): Երկերում եվրոպ. դաս. ձևերը միահյուսել է արլ. երաժշտության ելևէջ–կշռույթ. ինքնատիպ կերտվածքի հետ: Կ. Պոլսում ղեկավարել է սիմֆ. համերգներ: Հեղինակ է երգերի, թատեր. երաժշտության (Պ. Դուրյանի «Վարդ և Շուշան», Թ. Թերզյանի «Սանդուխտ», ևն), երաժշտ. կատակերգությունների («Արիֆի խարդախությունը», 1872, «Քեոսն Քեհյա», 1874, «Էլելեբիջի Հոր–հոր աղա», 1876, «Զեմիրե», օպերա–կախարդապատկեր), «Ինդիանա» (1897) օպերայի: Վերջին երաժշտաթատեր. գործն անավարտ է:

ՉՈՒԽՈՒՋՅԱՆ Գառնիկ Ալեքսանի (ծ. 1935), քիմիկոս–օրգանիկ: Քիմ. գիտ. դ–ր (1972), պրոֆ. (1979): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1990–ից): Աշխ–նեքը վերաբերում են համասեռ և միջֆազ. կատալիզի պայմաններում չհագեցած միացությունների ստացման ու փոխակերպման ռեակցիաներին: Մշակել և բժշկության մեջ ներդրել է երկշերտ, ինքնակպչուն կենսահամատեղելի թաղանթներ, սպունգներ, սոսինձներ, հակաայրվածք. քսուքներ ևն: 2000–ական թթ–ից՝ ԱՄՆ–ում:

ՉՈՒԽՎԱՋՅԱՆ Էմմա Հովսեփի (ծ. 1938), քիմիկոս–օրգանիկ: Քիմ. գիտ. դ–ր (1985): Աշխ–ները վերաբերում են հիմքով կատալիզվող չհագեցած ամոնիումային աղերի դիենային սինթեզի տիպի ներմոլ. ցիկլմանը, որն ունի կենսաակտիվ իզոինդոլինիումային, երկինդրոիզոինդոլինիումային աղերի և նրանց կոնդենսված համակարգերի սինթեզի մեծ հնարավորություններ, ինչը նորություն է միջմոլ. դիենային սինթեզի բնագավառում:

ՉՈՒԽՆԻՆ Գրիգորի Պավլովիչ (1848–1906), ռուս դերձովակալ (1903): 1902–04–ին՝ Նիկոլաևյան ծով. ակադ–ի և Ծով. կաղետ. կորպուսի պետ: 1904–ից՝ Սևծով. նավատորմի գլխ. հրամ.: Սպանել է էսէռ նավաստի Յ. Ակիմովը:

ՉՈՒԽՐԱՅ Գրիգորի Նաումովիչ (1921–2001), ռուս. կինոռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1981): Պ. Գ. *Չուխրայի* հայրը: Չ–ի ֆիլմերին բնորոշ են քնարականությունը, նուրբ հոգեբ–յունը («Քառասունմեկերորդը», 1956, «Բալլադ զինվորի մասին», 1959, «Մաքուր երկինք», 1961, «Հիշողություն», 1971, «Ճահճուտ», 1978, «Կյանքը հիասքանչ է», 1980, «Ես ձեզ կսովորեցնեմ երազել», 1984, ևն): Լենինյան մրց. (1961):

ՉՈՒԽՐԱՅ Պավել Գրիգորևիչ (ծ. 1946), ռուս. կինոռեժ.: ՌԴ ժող. արտիստ (2006): Գ. Ն. *Չուխրայի* որդին: Նկարահանել է «Մարդիկ օվկիանոսում» (1980), «Վանդակ դեղձանիկների համար» (1984), «Գողը» (1997), «Վարորդ Վերայի համար» (2004), «Ռուսական խաղ» (2007) գեղ., «Ինձ այդպես հիշիր» (1988), «Բանալի» (1992, ֆրանս. հեռուստատեսության համար) հեռուստատես. և այլ ֆիլմեր:

ՉՈՒԽՐԱՅ Սերգեյ Ալեքսեևիչ (ծ. 1955), ռուս. մարզիկ (բայդարկաներով թիավարություն): ԽՍՀՄ ս. վ. վ. (1976): Օլիմպ. խաղերի եռակի (1976, 1980՝ 2 ոսկե մեդալ), աշխարհի (1978–79, 1982), ԽՍՀՄ (1976, 1978, 1980, 1983, 1984) չեմպիոն:

ՉՈՒԿԱԲԻՆ Վիկտոր Իվանովիչ (1921–1984), ուկրաինացի մարզիկ (սպորտ. մարմնամարզություն): ԽՍՀՄ ս. վ. վ. (1951): Օլիմպ. խաղերի 7–ակի (1952՝ 4 ոսկե մեդալ, 1956՝ 3 ոսկե մեդալ), աշխարհի (1954), ԽՍՀՄ բազմակի (1948–56) չեմպիոն:

ՉՈՒԿՈՎՄԿԱՅԱ Լիդիա Կոռնեևնա (1907–1996), ռուս գրող: Կ. Ի. *Չուկովսկու* դուստրը: Հեղինակ է «Սոֆյա Պետրովնա» (1939–40, հրտ.՝ 1965, «Լքված տունը» վերնագրով), «Ձրասուզում» (1972, հրտ.՝ 1988, ԽՍՀՄ) վիպակների, «Վտարման գործընթաց» (1979, հրտ.՝ 1990, ԽՍՀՄ) կենսագր. երկի, «Գրառումներ Աննա Ախմատովայի մասին» (1976–80, հրտ.՝ 1997, ՌԴ) օրագիր–հուշագրության: ՌԴ Պետ. մրց. (1994):

ՉՈՒԿՈՎՍԿԻ Կոռնեյ Իվանովիչ (Կոռնեյչուկով Նիկոլայ Վասիլևիչ, 1882–1969), ռուս գրող, գրաքննադատ: Ն. Կ. *Չուկովսկու*, Լ. Կ. *Չուկովսկայայի* հայրը: Չ. առավել հայտնի է որպես մանկագիր («Չոփ–չոփ արա», 1923, հայ.՝ 1955, «Խավարասեր հսկան», 1923, «Այբոլիտ», 1929, հայ.՝ «Բժիշկ Այբոլիտը», 1938, «Բիբիգոնի արկածները», 1945, հայ.՝ 1972, ևն): Հեղինակ է նաև «Հեխովից մինչև մեր օրերը» (1908), «Երկուսից մինչև հինգ» (1928), «Նեկրասովի վարպետությունը» (1952), «Հեխովի մասին» (1967) և այլ աշխ–ների:

Լենինյան մրց. (1962):

ՉՈՒԿՈՎՍԿԻ Նիկոլայ Կոռնեևիչ (1904–1965), ռուս գրող: Կ. Ի. *Չուկովսկու* որդին, Հեղինակ է «Բալթիական երկինք» (1954) վեպի, նաև հայտնի ծովագնացների մասին պատմվածքների, պատմահեղ. թեմաներով ու կենսագր. երկերի: Հայ. հրատարակվել է «Ծովային որսորդը: Գետափի տնակը» (1977) վիպակների ժող–ը:

ՉՈՒԿՈՏԱ–ԿԱՄՉԱՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, պայմանականորեն հնասիական լեզվաընտանիքի ճյուղ՝ տարածված Հս–արլ. Սիբիրում: Ունի 2 ճյուղ՝ հս. (չուկոտերեն, մեռած կերեկերեն, կորյակերեն) և հվ. (իտելմեներեն):

ՉՈՒԿՈՏԵՐԵՆ, *չուկչիների* լեզուն: Պատկանում է հնասիական լեզվաընտանիքի չուկոտա–կամչատական խմբին: Գրի հիմքում՝ լատ. (1931–ից), ապա ռուս. (1936–ից) այբուբենն է:

ՉՈՒԿՈՏԻ ԹԵՐԱԿՂԶԻ, ՌԴ Մագադանի մարզում: Տարածքը՝ շուրջ 49 հզ. *կմ*²: Ափերը ողողվում են Բերինգի ծովի, Անադիրի ծոցի և Չուկոտի ծովի ջրերով: Հս. Ամերիկայից բաժանվում է *Բերինգի նեղուցով*: Մեծ մասն զբաղեցնում է Չուկոտի բարձրավանդակը: Օգտ. հանածոներից կան անագ, վոլֆրամ, ոսկի:

ՉՈՒԿՈՏԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՕԿՐՈՒԳ, վտմ ՌԴ Հեռավորարլ. դաշն. օկրուգի կազմում: Տարածքը՝ 721,5 հզ. *կմ*², բն.՝ 49,5 հզ. (2009): Ազգ. կազմը՝ ռուսներ (51,9 %), չուկչիներ (24 %), էսկիմոսներ (2,9 %), էվեններ (2,6 %), կորյակներ ևն: Վարչ. կենտրոնը՝ Անադիր: Կազմավորվել է 1930–ին:

ՉՈՒԿՈՏԻ ԾՈՎ, Հս. սառուցյալ օվկ–ի ծայրամաս. ծով՝ Ասիայի և Հս. Ամերիկայի ափերի մոտ: Մակերեսը՝ 595 հզ. *կմ*²: Առլգն խոր.՝ 1256 *մ*: Խոշորագույն կղզին՝ *Վրանգելի*: Ծոցերը՝ Կոլյուչինի, Կոցեբու: Տարվա մեծ մասը սառցածածկ է: Գլխ. նվինգստ–ր՝ Ուելեն:

ՉՈՒԿՉԻՆԵՐ (ինքնանվանումը՝ լուրավետլան), ժողգ ՌԴ Չուկոտի ԻՕ–ում (12,6 հզ.) և Կամչատկայի մարզում (1,5 հզ.): Ընդհ. թիվը ՌԴ–ում՝ 15,8 հզ. (2002): Լեզուն՝ չուկոտ.: Հավատացյալներն ուղղափառ քրիստոնյա են:

ՉՈՒԿՈՒՉԱՆՆԵՐ (Chasmistes cujus), ծածանազգիների կարգի ձկների ընտանիք: Երկ.՝ մինչև 1,2 *մ*, տեսակների մեծ մասինը՝ մինչև 60 *սմ*: Հայտնի է մոտ 80 տեսակ՝ հիմնականում Կենտր. և Հս. Ամերիկայի քաղցրահամ ջրերում, նաև Արլ. Սիբիրի գետերում և Յանցգի գետի ավազանում: Որոշ տեսակներ կլիմայավարժեցնում և բազմացնում են:

ՉՈՒԿՈՒՐՈՎԱ (թուրք.՝ Cukurova), **Կիլիկյան**, ցածրավայր Թուրքիայի հվ–ում՝ Տավրոսի լ–ների և Միջերկր. ծովի միջև: Երկ.՝ շուրջ 150 *կմ*, լայն.՝ մինչև 70 *կմ*: Կազմված է Սեյհան և Ջեյհան գետերի բերուկներից: Բամբակագործ. շրջան է: Չ–ում են Ադանա, Ջեյհան, Մերսին ք–նեը, կերաթեփե ազգ. պարկը:

ՉՈՒՄԱԿՈՎ Միխայիլ Պետրովիչ (1909–1993), ռուս վիրուսաբան: ԽՍՀՄ ԲԳԱ

ակադ. (1960): Սոց. աշխ. հերոս (1984): ԽՍՀՄ ԲԳԱ պոլիոմիելիտի և վիրուս. ուղեղաբորբերի ինստ–ի հիմնադիր–տնօրեն (1955–72): Աշակել և ներդրել է (Ա. Ա. ***Սմորոդինցևի*** հետ) հակապոլիո–միելիտային վակցինա: Լենինյան (1963), ԽՍՀՄ Պետ. (1941) մրց–ներ:

ՉՈՒՅԿՈՎ Իվան Սեմյոնովիչ (ծ. 1935), ռուս. գեղանկարիչ: Ս. Ա. ***Չույկովի*** որ–դին: 1960–80–ական թթ–ի մոսկովյան «ոչ պաշտոնական արվեստի» վարպետ–ներից: ***Փոփ–արտի*** ոգով, ***սյուրռեալիզ–մի*** տարրերով ստեղծել է վառ, գունեղ կերպարներ («Ճանապարհային նշան II», 1973), ինստալացիաներ («Վերլուծական ծառ», 2008):

ՉՈՒՅԿՈՎ Սեմյոն Աֆանասևիչ (1902–1980), ռուս գեղանկարիչ: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1963): ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի անդամ (1958): Ի. Ս. ***Չույկովի*** հայ–րը: Ստեղծել է ժանր. պատկերներ և բնանկարներ՝ նվիրված Ղրղըզստանի («Ղրղըզական կոլտնտեսային սյուիտ», նկարաշար, 1939–48, ևն) և Հնդկաստա–նի («Հնդկաստանի հասարակ մարդկանց մասին», եռապատկեր, 1957–60, ևն) ժողդ–ների կյանքին ու բնությանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949, 1951):

ՉՈՒՅԿՈՎ Վասիլի Իվանովիչ (1900–1982), խորհրդ. զորահրամ., ԽՍՀՄ մարշալ (1955): ԽՄ հերոս (1944, 1945): ՀՄՊ–ի ժամանակ եղել է բանակների (այդ թվում՝ Ստալինգրադի ճակատամարտի ժամա–նակ՝ 62–րդ բանակի) հրամ.: 1949–ից՝ Գեր–մանիայում տեղակայված խորհրդ. զորքե–րի, Կիևի ՋՕ զորքերի գլխ. հրամ., 1960–ից՝ պաշտպ–յան նախարարի տեղակալ և ցամաք. զորքերի գլխ. հրամ., 1961–ին և 1964–72–ին՝ ԽՍՀՄ քաղպաշտպ–յան պետ:

ՉՈՒՆԱ (վերին հոսանքներում՝ Ուդա), գետ Արլ. Սիբիրի հվ–արլ–ում: Երկ.՝ 1203 *կմ*, ավազանը՝ 56,8 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 300 *մ*^{3}/*վ*: Լուղարկելի է:

ՉՈՒՆՉՈՒՋՈՎ Պետրոս (Պյոտր) Անտոնի (1918–1982), ռազմ. գործիչ, խորհրդ. բա–նակի հրետանու գեն–լեյտ. (1970): ՀՄՊ–ի ժամանակ մասնակցել է Լենինգրադի պաշտպ–յանը: 1943–ին՝ Լենինգրադ. ռազ–մաճակատի 23–րդ բանակի 10–րդ հրաձգ. դիվիզիայի հրետանու շտաբի պետ, 1944–ին՝ շտաբի հետախուզության բաժնի պետի, պատերազմից հետո՝ Անդրկով–կաս. ՋՕ ՀՕՊ–ի, Հյուսիսկովկաս. ռազմ. օկրուգի շտաբի պետ:

ՉՈՒՆՅԻՆ, **Յույչեն, Բասյան**, ք. Չինաս–տանի Սիչուան պրովինցիայում՝ Յանցզի գետի ափին: Բն.՝ 4,8 մլն (արվարձաննե–րով՝ 7,8 մլն, 2010): Ունի օդանավակայան: Մոտոցիկլների և սկուտերների (շուրջ 8,6 մլն, 2007), ավտոմոբիլների (շուրջ 1 մլն) արտադր–յան խոշոր կենտրոն է: Կան ՏՏ ոլորտի ՁՀՓԿԱ իրականացնող ընկ–ներ:

ՉՈՒՊՐԻՆԻՆ Սերգեյ Իվանովիչ (ծ. 1947), ռուս գրաքննադատ: 1994–ից՝ «Ձնամյա» (ռուս.) ամսագրի գլխ. խմբ.: Հեղինակ է ժամանակակից ռուս. պոեզիայի և ար–ձակի մասին «Խոշոր պլանով» (1983) հոդվածների ժող–ի, «Քննադատությունը քննադատներն են» (1988) աշխ–յան: «XXI դարի գրող» միջազգ. մրց. (2015):

ՉՈՒՎԱՇԵՐԵՆ, ***չուվաշների*** լեզուն: Չու–վաշիայի պետ. լեզուներից: Պատկանում է թյուրք. լեզվաընտանիքի չուվաշ. (բուլ–գար.) խմբին: Հնագույն գրավոր հուշար–ձաններն ավանդված են XVIII դ–ից: Գրի հիմքում ռուս. այբուբենն է:

ՉՈՒՎԱՇԻԱ, **Չուվաշական Հանրապե–տություն**, ՌԴ դաշն. միավոր: Տարած–քը՝ 18,3 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,3 մլն (2009): Ազգ. կազմը՝ չուվաշներ (67,9 %), ռուսներ (26,5 %), թաթարներ (2,8 %) ևն (2002): Վարչ. կենտրոնը՝ ***Չեբոկսարի***: Կազմա–վորվել է 1920–ին՝ որպես Չուվաշ. ԻՕ, 1925–92–ին՝ Չուվաշ. ԻԽՍՀ:

ՉՈՒՎԱՇՆԵՐ, թյուրք. ժողդ ՌԴ–ում, Չու–վաշիայի հիմն. բնակչությունը (889,3 հզ.): Ապրում են նաև Բաշկիրայում (117,3 հզ.), Թաթարստանում (126,5 հզ.), Ուլյա–նովսկի (111,3 հզ.), Սամարայի մարզերում են: Ընդհ. թիվը ՌԴ–ում՝ 1,6 մլն (2002): Լեզուն՝ չուվաշ.: Հավատացյալներն ուղ–ղափառ քրիստոնյա են:

ՉՈՒՐԻԳԵՐԱ (Churriguera) Խոսե Բենիտո դե (1664–1725), իսպանացի ճարտ., քանդ.: Եղբայրների՝ **Խոակին** (1674–1724) և **Ալ–բերտո** (1686–1750) Չ–ների հետ մշակել է իսպ. բարոկկո ճարտ–յան ոճ. տարբերակ («չուրիգերեսկո»), որտեղ համադրել է բարոկկոյի, գոթ. ոճի և իսպ. Վերածննդի ճարտ–յան հնարքները (նախագծել է Գե–ղեցիկ արվ–ների թագավոր. ակադ–ի «Սան Ֆեռնանդո» շենքը Մադրիդում, 1724–ից):

ՉՈՒՐԻԿՈՎԱ, Իննա Միխայլովնա (ծ. 1943), ռուս. դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1991): 1973–ից՝ Մոսկվայի Լենինյան կոմե–րիտմիության անվ. (1990–ից՝ «Լենկոմ») թատրոնի դերասանուհի (Սառա՝ Ա. Պ. Չեխովի «Իվանով», Օֆելյա՝ Վ. Շեքսպի–րի «Համլետ», Իրա՝ Լ. Ս. Պետրուշևսկու «Երկնագույն զգեստով երեք աղջիկ», ևն): Նկարահանվել է ամուսնու՝ Գ. Ա. ***Պանֆի–լովի*** («Կրակի միջով անցում չկա», «Սկիզբ», «Խոսք եմ խնդրում», «Վասսա», «Մայրը», «Անմեղ մեղավորներ») և այլ ռեժ–ների («Պալատական հեղաշրջման գաղտնիք–ները», «Ռազմաղաշտային սիրավեպ» ևն) ֆիլմերում: ՌԴ Պետ. մրց. (1996):

ՉՈՒՐՄԻՆԱ Լյուդմիլա Ալեքսեևնա (ծ. 1941), ռուս. դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1981): 1974–ից՝ Լենինգրա–դի Ա. Ս. Պուշկինի անվ. դրամատիկ., 1984–ից՝ Խորհրդ. բանակի կենտր. թատ–րոնների դերասանուհի (Լեդի Մակբեթ՝ Վ. Շեքսպիրի «Մակբեթ», Նաստասյա Ֆիլիպովնա՝ «Ապուշը»՝ ըստ Ֆ. Մ. Դոս–տոևսկու, ևն): Նկարահանվել է «Կռունկ», «Օլեսյա», «Դոնյան պատմվածք», «Եր–կու տոմս ցերեկային սեանսի համար», «Ուգրյում գետը», «Վահան և սուր» (հե–ռուստաֆիլմ), «Մարգոշա» (հեռուստասե–րիալ) և այլ ֆիլմերում: ՌԽՖՍՀ Վասիլև եղբայրների անվ. Պետ. մրց. (1970):

ՉՈՒՖՈՒՏ ԿԱԼԵ, միջնադար. ք–ամրոց (հիմնադրվել է V–VI դդ–ում) Ղրիմում (այժմյան Բախչիսարայի մոտակայքում): Պահպանվել են դրամահատարանի և այլ քարանձավներ, մզկիթի, դամբարանի մնացորդներ (1437): Հանրապետ. նշա–նակության մշակութ. օբյեկտ է:

ՉՔՆԱՂ, գետ ՀՀ Լոռու մարզում, Ձո–րագետի աջ վտակը: Սկիզբ է առնում Բազումի լ–շղթայի հս. լանջերից՝ 2420 *մ* բարձր–ից: Երկ.՝ 28 *կմ*, ավազանը՝ 163 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 2,56 *մ*^{3}/*վ*, հոսքը՝ 82,5 մլն *մ*^{3}: Մնումը խառն է՝ հալոցքային (41 %), անձրևային (30 %) և ստորերկրյա (29 %), վարարումը՝ մայիս–հուլիսին, որի ընթացքում ձևավորվում է տարեկան հոսքի 58 %–ը:

ՉՔՉՔԱՆՆԵՐ (Turdus), ***կեռնեխինների*** ըն–տանիքի թռչուններ: Հայտնի է 10 տեսակ, ՀՀ–ում՝ 2 (մարզագետնային և սևագլուխ Չ.): Ճնճղուկից փոքր են, երկ.՝ 12,5–20 *սմ*, կ. զ.՝ 15–16 *գ*: Հաճախ նստում են թփուտների ծայրերին: Հիմնականում միջատակեր են:

Պ

Պ, հայ. այբուբենի 26-րդ տառը, անվանումը՝ պե: Ունի ***գրչագիր***, ***երկաթագիր***, ***բոլորգիր***, ***շղագիր***, ***նուրբգիր*** տառատեսակները: Հայ-ի շրթնային խուլ պայթական բաղաձայն հնչյուն (հնչույթ) է: Թվային արժեքը՝ 800:

ՊԱ (ֆրանս.՝ pas – քայլ, < լատ. passus), 1. **պարաքայլ** (< ֆրանս. pas de dance), ոտքերի որոշակի դիրքերով ու քայլափոխով ռիթմիկ շարժում: 2. Երաժշտ. տակտերի որոշակի քանակի, նաև բալետում պար. ամբողջ. համարի վրա բաշխված պարաքայլերի համադրությունը:

ՊԱ ԴԵ ԿԱԼԵ (Pas de Calais), **Դուվրի նեղուց**, Եվրոպայի մայրցամաք. մասի և Մեծ Բրիտանիա կղզու միջև: Երկ.՝ 37 *կմ*, առլգն լայն.՝ 32 *կմ*, խոր.՝ 21 *մ*: Նվինգստ-ներն են Դուվրը, Կալեն, Դյունկերկը: Նեղուցի հատակին կառուցվել է երկթղ. թունել:

ՊԱԱԹԱՇՎԻԼԻ Լևան Գեորգի (ծ. 1926), վրացի կինոօպերատոր: ՎԽՍՀ ժող. արտիստ (1979): Նկարահանել է «Ուրիշի երեխաները» (1958), «Յոտեսությունն, տղաներ» (1966), «Վազք» (1971), «Ռոմանս սիրահարների մասին» (1974), «Սիբիրիադա» (1979), «Կապույտ լեռներ կամ Անհավատալի պատմություն», «Երիտասարդ կոմպոզիտորի ճանապարհորդությունը» (երկուսն էլ՝ 1984), «Մնաս բարով երիտասարդություն» (1998) և այլ ֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. մրց (1985):

ՊԱԱՍԻԿԻՎԻ (Paasikivi) Յուխո Կուստի (1870–1956), Ֆինլանդիայի նախագահ՝ 1946-ից: 1918-ին և 1944–46-ին՝ Ֆինլանդիայի վարչապետ:

ՊԱԲՍՏ (Pabst) Գեորգ Վիլհելմ (1885–1967), գերմանացի կինոռեժ.: Նկարահանել է «Տխուր նրբանցք» (1925), «Համերաշխություն», «Երեք գրոշանոց օպերա» (երկուսն էլ՝ 1931), «Դոն Կիխոտ» (1933, գլխ. դերակատար՝ Ֆ. Ի. *Շալյապին*), «Դատավորություն» (1948), «Լռության տուն» (1950), «Վերջին արարը» (1955) և այլ ֆիլմեր:

ՊԱԳ, կղզի Ադրիատիկ ծովում՝ Դալմատինյան կղզեխմբում: Խորվաթիայի տիրույթ է: Տարածքը՝ 287 *կմ*^{2}, երկ.՝ մոտ. 60 *կմ*, բարձր.՝ մինչև 348 *մ*: Կան միջերկրածով. թփուտներ, պտղատու և խաղողի այգիներ ևն:

ՊԱԳԱՆ, ք. Մյանմայում՝ Իրվադի գետի ափին: Միջնադարում՝ համանուն պետության մայրաքաղաքը: Կան բազմաթիվ պաշտամունք. կառույցներ՝ Շվեզիգոն ստուպը (XI դ.), Անանդինների տաճարը (XI դ.) ևն:

ՊԱԳԱՆԻՆԻ (Paganini) Նիկոլո (1782–1840), իտալացի ջութակահար, կոմպոզիտոր: Համերգներով հանդես է եկել 11 տարեկանից, արժանացել համաշխ. ճանաչման, դարձել վիրտուոզ կատարման խորհրդանիշ: Ռոմանտիկ. արվ-ի և ջութակի արդի տեխնիկայի հիմնադիրներից է: Հեղինակ է ջութակի կապրիսների (1820), ջութակի և նվագախմբի կոնցերտների (1815–30), սոնատների («Գարուն», «Անընդհատ շարժում» ևն), վարիացիաների, կվարտետների, կիթառի համար պիեսների, կամեր-գործիք., վոկալ և այլ գործերի: Պ-ի երկերի հիման վրա և նրա թեմաներով ստեղծվել են ինքնուրույն գործեր (Ֆ. Լիստ, Ռ. Շուման, Յ. Բրամս, Ս. Վ. Ռախմանինով, Ս. Ասլամազյան և ուր.): 1954-ից Ջենովայում անցկացվում է ջութակահարների Պ-ի անվ. միջազգ. ամենամյա մրցույթ:

ՊԱԳՈԴԱ (պորտուգ.՝ pagoda, սանսկրիտ՝ բհագավատ – սրբազան), բուդդ. հուշակոթող և մասունքների պահոց: Ունեն տաղավարի կամ աշտարակի տեսք: Կառուցվել են մ. թ. սկզբին Չինաստանում, տարածված են Կորեայում, Ճապոնիայում, Վիետնամում:

ՊԱԳՐԵՐ (Pagrus), պերկեսակերպների կարգի ձկների սեռ: Երկ.՝ մինչև 50 *սմ* (երբեմն՝ մինչև 1,2 *մ*), կ. գ.՝ մինչև 2 *կգ*: Հայտնի է 6 տեսակ՝ բարեխառն և արևադարձ. ջրերում:

ՊԱԳՈՒՈՇՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ, գիտնականների հաս. շարժում՝ խաղաղության, զինաթափման, միջազգ. անվտանգության և գիտ. համագործակցության համար: Նախաձեռնել են Ա. Էյնշտեյնը, Ֆ. Ժուլիո-Կյուրին, Բ. Ռասելը և ուր.: 1957-ին արդյունաբերող Ս. *Իդոնի* աջակցությամբ Պագուոշում (Կանադա, որտեղից՝ անվանումը) տեղի է ունեցել Պ. շ-ման կողմնակիցների 1-ին խորհրդաժողովը (հրավիրվում է ամեն տարի): Խաղաղության Նոբելյան մրց. (1995):

ՊԱԴԱԼԿԱ, Գենադի Իվանովիչ (ծ. 1958), ռուս տիեզերագնաց օդաչու, գնդ.: ՌԴ հերոս (1999): Կատարել է տիեզ. 3 թռիչք (1998, 2004, 2009)՝ որպես տիեզերանավի հրամ. (զումար. ժամանակը՝ 585 *օր* 6 *ժ* 29 *ր*), 3 անգամ դուրս է եկել բաց տիեզերք (ընդհ. տևողությունը՝ 24 *ժ* 14 *ր*):

ՊԱԴԱՆԳ, ք. Ինդոնեզիայում՝ Սումատրա կղզում: Արմ. Սումատրա պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 985,8 հզ., ագլոմերացիայում՝ 1 մլն և ավելի (2010): Գղտ. տնկաստանների կենտրոն է:

ՊԱԴԱՆԻ ՀԱՐԹԱՎԱՅՐ, Հս. Իտալիայում՝ Ալպերի, Ապենինների և Ադրիատիկ ծովի միջև: Երկ.՝ 500 *կմ*, լայն.՝ մինչև 200 *կմ*, բարձր.՝ մինչև 400 *մ*: Հս-արմ. մասը կոչվում է Լոմբարդյան, արլ. մասը՝ Վենետիկ. ցածրավայր: Իտալիայի գղտ-յան հիմն. կենտրոնն է: Հարթավայրում են Միլան և Տուրին ք-ները:

ՊԱԴԵՐԵՎՍԿԻ (Paderewski) Իգնացի Յան (1860–1941), լեհ դաշնակահար, կոմպոզիտոր: Խմբագրել է Ֆ. Շոպենի ԵԼԺ-ն (1935–40): Հեղինակ է դաշնամուր. կոնցերտի, մանրանվագների, «Մանրու» (1901) օպերայի, սիմֆոնիաների և այլ գործերի:

ՊԱԴՈՒԱ (Padova), ք. Հս. Իտալիայում, Վենետիկի մարզի համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 216 հզ. (2010): Տրանսպորտ. կարևոր հանգույց է: Զրանցքով միանում է Ադրիատիկ ծովին: Հայտնի է մ. թ. ա. IX դ-ից: XV–XVI դդ-ում խոշոր մշակութ. կենտրոն էր, հայտնի էր նաև իր համալսարանով (XIII դ.): Հուշարձաններից են Պալացցո դելլա Ռաջոնե (1215–1300), Սանտա Մարիա Ասսունատա տաճարը (XVI դ.): 1308-ին Դավիթ վրդ. Կիլիկեցին կառուցել է հայկ. եկեղեցի, 1406-ին հայերն ունեցել են հոգևոր առաջնորդ: Տես նաև *Իտալիա*:

ՊԱԴՈՒԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Իտալիայի և Եվրոպայի հնագույն համալսարաններից: Հիմնադրվել է 1222-ին: 2016-ին ուներ շուրջ 65 հզ. ուսանող: Պ. հ-ում են սովորել Ն. Կոպեռնիկոսը, Գ. Գալիլեյը, Ա. Վեզալիուսը և ուր.:

ՊԱԶՈՎՍԿԻ Արի Սոիսեևիչ (1887–1953), ռուս. դիրիժոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1940): 1908–10-ին՝ Ս. Ի. Զիմինի օպեր. թատրոնի, 1936–43-ին՝ Լենինգրադի ՕԲԹ-ի, 1943–48-ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր (Մ. Ի. Գլինկայի «Իվան Սուսանին», 1939, Մ. Վ. Կովալի «Եմելյան Պուգաչով», 1942, ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1942, 1943):

...ՊԱԹԻԱ. (հուն.՝ pathos – տառապանք, հիվանդություն), բարդ բառերի մաս. նշանակում է հիվանդություն, տառապանք (օր.՝ նևրոպաթիա):

ՊԱԹՈՄՈՐՖՈԶ (< ...*պաթիա* և morphe – տեսք, ձև), հիվանդությունների կլինիկ. և ձևաբան. դրսևորումների փոփոխությունները՝ կապված արտաքին միջավայրի տարբեր գործոնների ազդեցության, այդ թվում՝ բուժման մեթոդների կատարելագործման հետ:

ՊԱԹՈՍ (հուն.՝ pathos – տառապանք, կիրք, ոգևորություն), 1. անտիկ գեղագիտ-յան մեջ՝ կիրք, հոգևոր ապրումներ՝ տառապանքի հետ կապված: Հակոտնյան *Էթոսն* է: 2. Գեղ. գործերի կամ առհասարակ ստեղծագործության գաղ. և հուզ. տրամադրվածությունը: 3. Առօրյա իմաստով՝ Պ. մարդկային ոգու հիացական և վեհ վիճակ:

ՊԱԺՈՒ (Pajou) Օգյուստեն (1730–1809), ֆրանսիացի քանդ.: Հեղինակ է քանդակ.

ձևավորումների (համահեղ., Վերսալի օպեր. դահլիճը, 1768–70, Արդարադատության պալատը, Պալե-Ռոյալ և Բուրբոնների պալատը, Փարիզ), արձանների («Լքված Փսիքեն», 1785–90), դիմաքանդակների («Մարի Լեշչինսկայա», 1769, «Բլեզ Պասկալ», 1781):

ՊԱԻԶԻԵԼԼՈ, **Պաեզիելլո** (Paisiello, Paesiello), Ջովաննի (1740–1816), իտալացի կոմպոզիտոր: Հեղինակ է բուֆֆ-օպերաների («Ջրաղացպանուհին», 1789, «Նինա կամ Սիրուց խելակորույսը», 1789, ևն), օպերա-սերիաների («Շատախոսը», 1764, «Սևիլյան սափրիչ կամ Զուր նախազգուշություն», 1782, ևն), օրատորիաների, կանտատների, սիմֆոնիաների և այլ երկերի:

ՊԱՒՍԻ ՀԻԼԵՆԴԱԼՑԻ (1722–1798), բուլղար պատմագիր: Ազգ-ազատագր. շարժման գաղափարախոս: Հեղինակ է «Սլավոնաբուլղարական պատմություն» (1762, հրտ.՝ 1848) աշխ-յան, որով սկզբնավորվել է բուլղ. նոր պատմագրությունն ու գրկ-ը:

ՊԱԼ (Pál) Լենարդ (ծ. 1925), հունգար ֆիզիկոս: ՌԳԱ արտ. թղթ. անդամ (1976): Զևակերպել է միջուկ. ռեակտորներում նեյտրոնների ժամանակ., տարած. և էներգետիկ. բաշխումը պայմանավորող ֆունկցիա (Պալ-Բեյի հավասարում):

ՊԱԼ (անգլ.՝ Phase Alternating Line – փուլի տող առ տող փոփոխություն), գունավոր հեռուստատեսության անալոգ. համակարգ, մշակել է գերմ. «Telefunken» ընկյան ճարտարագետ Վալտեր Բրյուխը: 1966–ից ընդունվել է Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում և Արմ. Եվրոպայի մի շարք այլ երկրներում ու Ավստրալիայում:

ՊԱԼԱԴԵ (Palade) Ջորջ Էմիլ (1912–2008), ռումին կենսաբան: 1946–ից՝ ԱՄՆ-ում: Աշխ-ները վերաբերում են ենթաբջջ. կառուցվածքների և նրանց դերի էլեկտրոնամիկրոսկոպ. հետազոտությանը: 1953-ին 1-ինն է նկարագրել ռիբոսոմները (Պ-ի գնդիկներ) և միտոքոնդրիաները: Նոբելյան մրց. (1974, Ք. Ռ. *Դը Դյուվի* և Ա. *Կլոդի* հետ):

ՊԱԼԱԴԻՆ Ալեքսանդր Վլադիմիրովիչ (1885–1972), ուկրաինացի կենսաքիմիկոս: Ուկր. ԳԱ ակադ. (1929, նախագահ՝ 1946–62-ին), ԽՍՀՄ (1942) և Բել. (1944) ԳԱ-ների ակադ.: Սոց. աշխ. հերոս (1955): Վ. Ի. *Պալադինի* որդին: Ուկր. ԳԱ կենսաքիմիայի ինստ-ի հիմնադիր-տնօրեն (1925-ից): Աշխ-ները վերաբերում են վիտամինների կենսաքիմիային, մկան. գործունեությանը, նյութափոխանակությանը, նյարդ. համակարգի գործունեության գործառն. կենսաքիմիային: Վ. Ի. Լենինի անվ. մրց. (1929):

ՊԱԼԱԴԻՆ Վլադիմիր Իվանովիչ (1859–1922), ռուս. բուսաբան և կենսաքիմիկոս, բույսերի ֆիզիոլոգիայի և կենսաքիմիայի գիտ. դպրոցի հիմնադիր: Ս. Պետերբուրգի ԳԱ (1914), ՌԳԱ (1917) ակադ.: Ա. Վ. *Պալադինի* հայրը: Բույսերի շնչառության տեսության ստեղծողներից է: Բույսերի շնչառությունը դիտել է որպես ֆերմենտ. շարժընթացների ամբողջություն, որն իրականանում է օքսիդազների և դեհիդրոգենազների համակարգով:

ՊԱԼԱԴԻՈՒՄ (Palladium), Pd, տարրերի պարբեր. համակարգի VIII խմբի քիմ. տարր: Ազնիվ մետաղ է, պատկանում է *պլատինային մետաղների* շարքին: Կարգաթիվը՝ 46, ա. զ.՝ 106,42: Կոչվել է Պալաս մոլորակի անունով: Հազվագյուտ մետաղ է, խտ.՝ 12,02 $գ/սմ^3$, $t_{հալ.}$՝ 1554°C: Գեղեցիկ արծաթասպիտակավուն, հեշտ գլանվող և կռելի մետաղ է: Մաքուր Պ. օգտագործում են էլեկտրոն. հպակներ, զտիչներ (ջրածնի մաքրման) պատրաստելու, պաշտպանիչ և գեղագիտ. պալադիումապատման համար: Պ-ի համաձուլվածքներն այլ մետաղների հետ օգտագործում են որպես կատալիզորդներ, ռեզիստորներ, հրակայուն զոդանյութեր ևն: Նրանցից պատրաստում են խողովակներ, ապակու հալման անոթներ, սինթետիկ մանրաթելերի ֆիլիերներ, բժշկ. գործիքներ, ոսկերչ. իրեր:

ՊԱԼԱԴԻՈՒՄՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, մետաղօրգ. միացություններ, որոնցում պալադիումի ատոմն անմիջականորեն միացած է ածխածնի ատոմին: Օգտագործում են օրգ. սինթեզում՝ որպես կատալիզորդներ:

ՊԱԼԱՄԱՍ Կոստիս (Palamas Constantinus, 1859–1943), հույն բանաստեղծ: Աթենքի ԳԱ անդամ (1926): Հեղինակ է «Յամբեր և անապեստներ» (1897), «Սատիրական էտյուդներ» (1912), «Սոնետներ» (1919) ժող-ների, «Գնչուի տասներկու երգը» (1907) քնարաէպիկ. պոեմի:

ՊԱԼԱՄԱՐՉՈՒԿ Պյոտր Գեորգիևիչ (1955–1998), ռուս արձակագիր, գրականագետ: Հեղինակ է «Եդին Դերժավին» (1982) վիպակի, «Գոգոլի ստեղծագործության բանալին» (1985), «Ալեքսանդր Սոլժենիցին: Ուղեցույց» (1989) գրականագիտ. աշխ-ների, «Իվանովյան բլուր» (1989), «Սոֆիայի տաճարի տարեգրություն…» (1991) վեպերի, «Խռովահույզ ժամանակաշրջանի տարեգրություններ» (1993) երկի, կրոն. թեմայով «Ոչ: Այո» (1995) վեպի, «Բանադրանք» (1998) ժող-ի, «Քառասուն քառասնաց: Մոսկվայի բոլոր տաճարների պատկերազարդ պատմությունը» (2-րդ հրտ., հ. 1–4, 1992–95) աշխ-յան:

ՊԱԼԱՆԳԱ (Palanga), ք. Լիտվայում՝ Բալթիկ ծովի ափին: Կլիմայաբերմուկաբուժ. առողջավայր է: Ջրաղվում են սաթի մշակությամբ: Կա սաթի թանգարան:

ՊԱԼԱՍԱՆՅԱՆ Ստեփան Հովհաննեսի (1837–1889), լեզվաբան, պատմաբան, բանասեր, մանկավարժ: 1869-ին մի խումբ մտավորականների հետ հիմնադրել է Թիֆլիսի Գայանյան օրիորդաց դպրոցը: Հեղինակ է «Ընդհանուր տեսութիւն արեւելեան նոր գրաւոր լեզուի հայոց» (1870) գր. արևելահայ-ի քերակ-յան, «Քերականութիւն մայրենի լեզուի» (1874) արևելահայ-ի առաջին, «Գործնական քերականութիւն հայերէն լեզուի» (հ. 1–2, 1868–69) դասագրքերի, «Ֆրանսերէն այբբենարանի» (1865), «Պատմութիւն հայոց գրականութեան» (հ. 1, 1865), «Պատմութիւն Հայոց: Սկզբից մինչև մեր օրերը» (հրտ.՝ 1890), «Ազգային կրթություն» (հրտ.՝ 1991) աշխ-ների: Կատարել է թարգմ-յուններ ֆրանս-ից:

ՊԱԼԱՎԱՆ (Palawen), կղզի Ֆիլիպին. կղզեխմբում: Տարածքը՝ 11,8 հզ. $կմ^2$, բարձր.՝ մինչև 2085 *մ*: Գլխ. ք-ը՝ Պուերտո Պրինսեսա:

ՊԱԼԱՍ, **ապարանք**, հանդիսավոր շենք Հռոմի Պալատինուս բլրի անունով, որտեղ կառուցվել են կայսեր Պ-ները: Հայաստանի հնագույն Պ-ները կառուցվել են ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններում (Տուշպա, Էրեբունի, Կարմիր բլուր ևն), արքունի Պ-ները՝ բնակավայրին կից կամ ներսում (Աղթամար, Անի ևն):

ՊԱԼԱՐ, բույսերի հաստացած (ձևափոխված) ընձյուղը և չզարգացած տերևները: Վերգետնյա Պ-ներն ունեն կոլոբաին, մի քանի խոլորձներ ևն, ստորգետնյա Պ.՝ կարտոֆիլը, գետնախնձորը ևն: Առանձին բույսերի Պ-ներ արժեքավոր սննդամթերք են:

ՊԱԼԱՐԱԲԱԿՏԵՐԻԱՆԵՐ, բակտերիաների սեռ, որոնք հատիկաընդավոր մի շարք բույսերի արմատների վրա գոյացնում են ***պալարներ*** և սևեռում մթն-ի ազոտը՝ բույսերի հետ համակեցության պայմաններում: Սպոր չեն առաջացնում, օդակյաց են, հողը հարստացնում են ազոտով: Տես նաև *Ազոտսևեռում*:

ՊԱԼԱՐԱՅԻՆ ԵՐԿԱՐԱԿՆՃԻԹՆԵՐ, երկարակնճիթների ընտանիքի բզեզներ: Ընդավորների (հատկապես՝ ստևախիտ առվույտի, երեքնուկի և այլ տեսակների) վնասատուներ են: Մնվում են տերևներով, թրթուրները՝ արմատներով և պալարներով:

ՊԱԼԱՐԱՊՏՂԱՎՈՐՆԵՐ, բույսերի խումբ, որոնց ստորգետնյա ցողունների կամ կողմն. արմատների վրա գոյանում են ***պալարները***, որոնք պարունակում են ածխաջրեր, հիմնականում՝ օսլա (օր.՝ հացարմատը՝ մինչև 30 %), կամ ինուլին (օր.՝ գետնախնձորը՝ 12 %), սպիտակուց, վիտամիններ ևն: ՀՀ-ում մշակում են հիմնականում կարտոֆիլ, գետնախնձոր:

ՊԱԼԱՐԱՍՈՒԽՈՒԿՆԵՐ, բույսի ստորգետնյա ընձյուղը, որը նման է սոխուկի, սակայն կառուցվածքով ավելի մոտ է ***պալարին***: Կազմված են մսալի ցողուն. մասից և այն կիպ փաթաթող չոր տերևային թեփուկներից: Բնորոշ է քրքումին, թրաշուշանին և շղեղին:

ՊԱԼԱՑԿԻ (Palacký) Ֆրանտիշեկ (1798–1876), չեխ պատմաբան, փիլ.: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1863): Չեխ. 1-ին գիտ. ամսագրի հիմնադիրը (1827): Հիմն. աշխ-ներն են՝ «Չեխ ժողովրդի պատմությունը Չեխիայում և Մորավիայում» (ինագույն ժամանակներից մինչև 1526-ը, հ. 1–5, 1836–67), «Գեղագիտության ակնարկային պատմություն» (1823, «Krok» ամսագիր) ևն:

ՊԱԼԱՈՒ (Բելաու, Palau, Belau), **Պալաուի Հանրապետություն** (Republic of Palau), պետություն Կարոլինյան կղզիների արմում՝ Պալաու կղզեխմբում: Տարածքը՝ 459 $կմ^2$, բն.՝ 20,8 հզ. (2009), հիմնականում՝ միկրոնեզիացիներ-պալաուներ: Հավատացյալները կաթոլիկ են: Պետ. լեզուները՝ անգլ., պալաուերեն: Մայրաքաղաքը՝ Մելեկեոկ (համանուն կղզում): Վարչականորեն բաժանված է 16 նահգ-ի: Պետության գլուխը՝ նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ Ազգ. կոնգրեսը: Դրամ. միավորը՝ դոլար (ԱՄՆ): Կլիման հասարակածային է: Ամսական միջին ջերմաստիճանը՝ 24–24°C: Ծածկված է մշտադալար հասարակած. անտառներով: 1994–ից անկախ պետություն է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 8,1 հզ. ԱՄՆ դոլար է (2003): Արտահանում է ձուկ, կոպրա (կոկոս. ընկույզի միջուկ):

ՊԱԼԱՒԱՔՅԱՆ Գրիգորիս (1879–1934), ազգ-եկեղեց. գործիչ: 1914–15-ին եղել է Երզնկայի գվռ-ի հայոց առաջնորդ. տեղապահ: 1921-ին Սողոմոն *Թեհլերյանի* դատի ժամանակ հանդես է եկել իբրև վկա: Աշխ-ներից հայտնի է «Հայ գողգոթան» (հ. 1, 2, 1922, 1959):

ՊԱԼԱՒԱԶԱՐՅԱՆ (Պալթազարյան) Ղուկաս Գասպարի (1810–1878), խմբ., հրտ.,

հաս. գործիչ: 1840–78-ին՝ *«Արշալոյս Արարատեան»* շաբաթաթերթի հիմնադիր-խմբ.: 1840-ին Զմյուռնիայում Ստեփանոս Պապոյանի հետ հիմնադրել է տպարան և վաճառատուն: Եղել է տեղի Մեսրոպյան և Հռիփսիմյան վարժարանների տեսուչ: Կատարել է թարգմ-յուններ:

ՊԱԼԵՄԲԱՆԳ (Palembang), ք-նվինգստ Ինդոնեզիայում՝ Սումատրա կղզում՝ Մուսիի գետաբերանում, Հվ. Սումատրա պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,28 մլն (2010): Նավթարդ-յան կենտրոն է: Ունի օդանավակայան:

ՊԱԼԵՈ... (հուն.՝ palaios – հին), բարդ բառերի մաս. ցույց է տալիս կապը հնության հետ (օր.՝ *պալեոգեն*, *պալեոլիթ* ևն):

ՊԱԼԵՈԳԵՅ (< *պալեո...* և հուն.՝ ge – երկիր), ցամաքի ֆաունային թագավորություն: Զբաղեցնում է հիմնականում Արկ. կիսագնդի արևադարձ. հարթավայրերը: Բնորոշ են Գոնդվանայի (նրա Բրազիլա-Աֆրիկ. մայրցամաքի) հնագույն ֆաունայի կենդանիների խմբեր, այդ թվում՝ ջայլամներ, երկշունչ ձկներ, կրիաներ, նաև կնճիթավորներ, մարդանման կապիկներ, գիշատիչներ ևն: Ընդգրկում է 3 ֆաունային մարզեր՝ Եթովպական (տենրեկներ, ընձուղտներ, գետաձիեր ևն), Մադագասկարյան (լեմուրներ ևն), Հինդո-Մալայան (բրդաթևիկներ, երկարակրունկներ, գիբոններ ևն):

ՊԱԼԵՈԳԵՆ (< *պալեո...* և հուն.՝ genos – ծնունդ, հասակ), կայնոզոյի խմբի ամենահին համակարգը. համապատասխանում է երկրի զարգացման կայնոզոյան դարաշրջանի 1-ին փուլին: Տևողությունը՝ 42 մլն տարի (65-ից մինչև 23 ±1 մլն տարի առաջ): Ստորաբաժանվում է 3 բաժնի՝ ստորին (պալեոցեն), միջին (էոցեն) և վերին (օլիգոցեն): Պ.-ում կենսանյութն ստացել է ժամանակակից տեսքը: Կավճի և Պ.-ի սահմանին առաջացել է լարամյան ծալքավորություն, էոցենի վերջում սկսվել է ալպ. ծալքավորությունը:

ՊԱԼԵՈԶՈՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ, պալեոզոյ (< *պալեո*... և հուն.՝ zoe – կյանք), *ֆաներոզոյի* 1-ին դարաշրջանը. նախորդում է *մեզոզոյին*: Տևողությունը՝ 284 մլն տարի (535±1-ից մինչև 251±3 մլն տարի առաջ): Ներառում է 6 երկրբ. համակարգեր (քեմբր, օրդովիկ, սիլուր, դևոն, կարբոն և պերմ): Պ. դ.-ում են առաջացել կալեդոնյան և հերցինյան լեռնակազմ. ծալքավորումները, արագորեն տարածվել են կարծր կմախքով ծով. կենդանիները: Բուսականությունն սկզբում ներկայացված էր ջրիմուռներով, իսկ դարաշրջանի վերջում՝ փարթամ անտառներով, որոնք առաջացրել են քարածխ. խոշոր հանքավայրեր: Դարաշրջանի վերջին կենդանի օրգանիզմների զգալի մասը վերացել է (ծով. կենդանիների ցեղերի շուրջ 80 և ընտանիքների շուրջ 50 %-ը, Պ. դ.-ին բնորոշ գրեթե բոլոր խմբերը): Պ. դ.-ի գոյացումները տարածված են նաև ՀՀ-ում և պարունակում են հիմնականում ֆոսֆորիտներ, մարմարներ ու քվարցիտներ:

ՊԱԼԵՈԼԻԹ, տես *Հին քարի դար*:

ՊԱԼԵՈՊԻՏԵԿ (< *պալեո*... և հուն.՝ pitecos – կապիկ), բրածո մարդանման կապիկ: Ոսկր. մնացորդները հայտնաբերվել են 1879-ին Հս. Հնդկաստանի ստորին պլիոցենի նստվածքներում: Որոշ գիտնականներ Պ.-ին դասում են դրիոպիտեկների շարքին:

ՊԱԼԵՈՑԵՆ, պալեոցենյան բաժին, *պալեոգենի* ստորին մասը՝ ստորին և վերին էոցեն, Պ.-ի սահմանին առաջացել է լարամյան ծալքավորություն, էոցենի վերջում սկսվել է ալպ. ծալքավորությունը:

ՊԱԼԵՈՑՈՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ, պալեոզոյ (< *պալեո*... և հուն.՝ zoe – կյանք), *ֆաներոզոյի* 1-ին դարաշրջանը. նախորդում է *մեզոզոյին*: Տևողությունը՝ 284 մլն տարի (535±1-ից մինչև 251±3 մլն տարի առաջ): Ներառում է 6 երկրբ. համակարգեր (քեմբր, օրդովիկ, սիլուր, դևոն, կարբոն և պերմ): Պ. դ.-ում են առաջացել կալեդոնյան և հերցինյան լեռնակազմ. ծալքավորումները, արագորեն տարածվել են կարծր կմախքով ծով. կենդանիները: Բուսականությունն սկզբում ներկայացված էր ջրիմուռներով, իսկ դարաշրջանի վերջում՝ փարթամ անտառներով, որոնք առաջացրել են քարածխ. խոշոր հանքավայրեր: Դարաշրջանի վերջին կենդանի օրգանիզմների զգալի մասը վերացել է (ծով. կենդանիների ցեղերի շուրջ 80 և ընտանիքների շուրջ 50 %-ը, Պ. դ.-ին բնորոշ գրեթե բոլոր խմբերը): Պ. դ.-ի գոյացումները տարածված են նաև ՀՀ-ում և պարունակում են հիմնականում ֆոսֆորիտներ, մարմարներ ու քվարցիտներ:

ՊԱԼԵՈՊՈՏԱՄ, հին գետաբերան Վ. Շիմպերը 1874-ին:

ՀՀ տարածքում Պ. մեծ մասամբ հանդիպում է դանիական հարկի հետ և կոչվում է դան–Պ., որը ֆլիշային նստվածքների ձևով զարգացած է Մերձերևանյան շրջանում (Գառնի), Վեդի գետի ավազանում (Կոտուց), Վայոց ձորում, Շիրակում, Զանգեզուրում, ինչպես նաև որոշ հորատանցքերում (Դվին, Վեդի ևն):

ՊԱԼԵՍՏՐԻՆԱ (Palestrina) Ջիովաննի Պիեռլուիջի դա (մոտ 1525–1594), իտալացի կոմպոզիտոր: Ակորդ-պոլիֆոնիկ ոճի հիմնադիրը: Վոկալ պոլիֆոնիայի խիստ ոճը հասցրել է կատարելության: Հեղինակ է մեսսաների («Մարչելլո պապի մեսսան», 1555, ևն), 370-ից ավելի մոտետների (այդ թվում՝ «Երգ երգոց» շարքը, ևն), մազնիֆիկատների, օֆերտորիաների, հիմների, սաղմոսների, մադրիգալների:

ՊԱԼԵՐՄՈ (Palermo), ք. Իտալիայի Սիցիլիա կղզում, Սիցիլիա մարզի և համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Նվինգստ՝ Տիրենյան ծովի ափին: Ունի օդանավակայան: Պ.-ում տեղի է ունենում ամենամյա միջերկրածով. տոնավաճառ: Քաղաքի միջնադար. շինքերին բնորոշ է ռոման. կամ գոթ. և արաբ. ու բյուզ. ճարտ. տարրերի համադրումը՝ Սարտորբանա եկեղեցին (1143), Պալացցո Ռեալեն (XI դ.), Լա Զիզա, Լա Կուբա (երկուսն էլ՝ XII դ.) պալատները ևն: 1877-ից Պ.-ում է հինեգիպտ. հայտնի տարեգրությունը՝ Պալերմոյի արձանագրությունը. փորագրվել է Հին թագավորության 5-րդ արքայատան ժամանակաշրջանում (մ. թ. ա. XXV դ.), ընդգրկում է 6–7 հարյուրամյակ. Հին Եգիպտոսի ժամանակագրության կարևոր աղբյուր է:

ՊԱԼԵՐՄՈՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Իտալիայի հնագույն համալսարաններից: Հիմնադրվել է 1498-ին: 2016-ին ուներ շուրջ 50 հզ. ուսանող:

ՊԱԼԻ, միջին հնդ. գր. լեզու: Բուդդ. Կանոնի լեզուն: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի հնդիրան. ճյուղի իրան. ենթաճյուղին: Ստեղծվել է Հնդկաստանում, տարածվել Շրի Լանկա կղզում, I հզ-ամյակի վերջ–II հզ-ամյակի սկզբին՝ Հնդկաստանից արլ. ընկած երկրներում: Պ. պահպանվել է որպես կրոնի (պաշտամունք.) և գրկ-յան լեզու Շրի Լանկայում, Թաիլանդում, Լաոսեում, Կամբոջայում, Վիետնամում:

ՊԱԼԻ ՔԱԼՖԱ (թուրք.՝ քալֆա – ինքնուս ճարտ., ծ. թ. անհտ–1803), ճարտ.: Գրիգոր և Սենեքերիմ *Պալյանների* հայրը: XVIII դ.-ի սկզբին Կեսարիայից գաղթել է Կ. Պոլիս, որպես «կառույցներ նորոգող»՝ աշխատել է պալատում, ապա նշանակվել պալատ. ճարտ.:

ՊԱԼԻՄ, *սաղմոնաձկների* ընտանիքի ձուկ: Արկտիկ. լերկաձկների ձևեր են (երկ.՝ մինչև 70 *սմ*, կ. զ.՝ մինչև 7 *կգ*), ապրում են Հս. Եվրոպայի ծովերում: Հաճախ նրանց միավորում են ինքնուրույն տեսակի մեջ կամ դիտում որպես տարբեր տեսակներ: Արժեքավոր արդյունագործ. ձուկ է:

ՊԱԼԻԿԻՐ, *Միկրոնեզիայի Դաշնային Նահանգների* մայրաքաղաքը Պոնապեյի կղզում: Բն.՝ 6,6 հզ. (2002):

ՊԱԼԻՆԳԵՆԵԶ (< հուն. palin – նորից, կրկին և *...գենեզ*), ավելի կամ պակաս հեռավոր նախնիների հասուն ձևերին բնորոշ հատկանիշների ի հայտ գալը սաղմում: Եզրույթը ներմուծել է Է. *Հեկկելը* (1866):

ՊԱԼԻՆՈԼՈԳԻԱ, (< հուն. paline – նուրբ փոշի և *...լոգիա*), **փոշաբանություն**, բուսաբ-յան բաժին. ուսումնասիրում է բույսերի ծաղկափոշին և սպորները, նրանց ձևը, կառուցվածքն ու զարգացումը (հատկապես՝ թաղանթների), տարածման և պահպանման օրինաչափությունները: ՀՀ-ում պալինոլոգ. ուսումնասիրությունների հիմքը դրվել է 1948-ին՝ Ա. Թախտաջյանի և Ա. Յացենկո-Խմելևսկու նախաձեռնությամբ:

ՊԱԼԼԱԴԻՈՆ, *Աթենաս* աստվածուհու փայտե արձանը հուն. դից-յան մեջ, որն առևանգել են Ոդիսևսը և Դիոմեդեսը: Ըստ Վերգիլիոսի «Էնեականի»՝ Տրոյայի անկումից հետո իսկական Պ. Էնեասը տեղափոխել է Իտալիա:

ՊԱԼԼԱՍ (Pallas) Պյոտր Սիմոն (1741–1811), գերմանացի բնախույզ: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1767): 1767-ից՝ Ռուսաստանում: Ղեկավարել է Ս. Պետերբուրգի ԳԱ գիտ. արշավախմբերը (1768–74), որոնց արդյունքներն ամփոփել է «Ճանապարհորդություն Ռուսական պետության տարբեր գավառներով» (հ. 1–3, 1773–88) գրքում: Հեղինակ է նաև «Ռուսաստանի ֆլորան» (ռուս., հ. 1, 2, 1784, 1788) և այլ աշխ-ների:

ՊԱԼԼԱՍԻ ՄԱԳԼՅՈՂ ՍԱՀՆՕԶ, քառաշերտ սահնօձ, *լորտունների* ընտանիքի էլաֆ սեռի օձ: Սարմնի երկ.՝ 27–180 *սմ*, պոչը մարմնից 4–5 անգամ կարճ է: Էգերը խոշոր են արուներից: Մնվում է մանր անողնաշարներով: Օգտագործվում է ԳՀ նպատակներով: Ագրեսիվ է, կծածը մարդու և կենդանիների համար վտանգավոր չէ: Գրանցվել է ՀՀ Կարմիր գրքում:

ՊԱԼԼԻ (Pally, Palli) Զենաիդա (1919–1997), ռումին երգչուհի (մեցցո-սոպրանո): ՌՍՀ ժող. արտիստուհի (1962): 1944–77-ին՝ Բուխարեստի ՕԲԹ-ի մեներգչուհի (Կարմենն՝ Ժ. Բիզեի «Կարմենն», Սֆինքս՝ Ջ. Էնեսկուի «Էդիպ», Ազուչենա, Ամներիս՝ Ջ. Վերդիի «Տրուբադուր», «Աիդա», ևն): ՌՍՀ Պետ. մրց. (1954):

ՊԱԼՄ (Palm) Սաթի-Յոհաննես (ծ. 1942), էստոնացի երգիչ (բաս): Էստ. ԽՍՀ ժող. արտիստ (1980): 1969-ից՝ Տալլինի ՕԲԹ-ի մեներգիչ (Մեֆիստոֆել՝ Ա. Բոյտոյի «Մեֆիստոֆել», Հոլանդացի՝ Ռ. Վագների «Թռչող հոլանդացին», Կառլոս II՝ Ջ. Վերդիի «Դոն Կառլոս», ևն): Մեներգիչների Ֆ. Վինյասի անվ. միջազգ. մրցույթի 2-րդ (1972, Բարսելոն), ԽՍՀՄ Պետ. (1983) մրց-ներ:

ՊԱԼՄԱ (Palma) Ռիկարդո (1833–1919), պերուացի գրող: Հեղինակ է «Դահճի քույրը» (1851) և այլ ռոմանտիկ. դրամաների, «Պերուական ավանդություններ» (հ. 1–12, 1872–1915) պատմվածքների, պատմ. անեկդոտների, լեգենդների և այլ ժող-ների:

ՊԱԼՄԱ, **Պալմա դե Մալյորկա** (Palma de Mallorka), ք. Իսպանիայի *Մալյորկա* կղզում, Բալեարյան կղզիների ԻՄ-ի և Բալեարես պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 390,4 հզ. (2010): Ունի օդանավակայան, համալսարան, երկրագիտ. թանգարան: Ճարտ. հուշարձաններից են տաճարը (XIII–XVI դդ.), Բորսան («Լոնխա», XV դ.), Մալյորկայի թագավորների պալատի ավերակները (XIV–XV դդ.):

ՊԱԼՄԲԱԽ Ալեքսանդր Ադոլֆովիչ (1897–1963), ռուս. բանաստեղծ: Տուվին. գրի ստեղծողներից:

ՊԱԼՄԵՐՍԹՈՆ (Palmerston) Հենրի Ջոն Թեմփլ (1784–1865), անգլիացի պետ. գործիչ: 1855–58-ին և 1859–65-ին՝ Մեծ Բրիտանիայի վարչապետ, 1830–34, 1835–41, 1846–51-ին՝ ԱԳ նախարար: Պ-ի կառ-յունը ճնշել է 1857–59-ի հնդ. ազգ. ապստամբությունը, Չինաստանում մասնակցել է Թայպինների ապստամբության ճնշմանը: Ղրիմի պատերազմի (1853–56) գլխ. կազմակերպիչներից էր:

ՊԱԼՄԻՏԻՆԱԹԹՈՒ, $CH_3(CH_2)_{14}COOH$, միահիմն հագեցած կարբոնաթթու: Անգույն բյուրեղ. նյութ է, $t_{հալ.}$՝ 62,9°C: Էսթերների ձևով (*գլիցերին*) պարունակվում է բուս. և կենդ. ճարպերում, մոմերում: Ստեարինաթթվի հետ խառնուրդը *ստեարինի* հիմքն է, Պ-ի աղերն օճառի բաղադրիչ են:

ՊԱԼՄԻՐԱ (հուն.՝ Պալմիրա, արամ.՝ Թադմոր), հնագույն ք. Ասորիքում (այժմ՝ Սիրիայի Թադմոր ք-ի մոտ): Հիշատակվում է մ. թ. ա. II հզ-ամյակի 1-ին կեսից: Եղել է *Տիգրան Բ Մեծի* տերության, ապա (մ. թ. ա. 63)՝ հռոմ. Ասորիք պրովինցիայի կազմի մեջ: 1882-ին Պ-ում պեղումներ է կատարել Սիմեոն *Աբամելիք-Լազարևը*: ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է: Զգալիորեն տուժել է Սիրիայում վերջին քաղաքաց. պատերազմից (2012–17):

ՊԱԼՄԻՐԱ (Palmira), ք. Կոլումբիայում՝ *Պանամերիկյան խճուղու* վրա: Բն.՝ 240,6 հզ. (2010):

ՊԱԼՅԱՆ Արմենակ Քրիստափորի (ծ. 1945), ճարտարագետ-էլեկտրիկ, տեխ. գիտ. դ-ր (1994), պրոֆ. (1999): Աշխ-ները վերաբերում են ծրագրավորման լեզուներին, բաշխված հաշվող. համակարգերի, ցանց. ծրագրավորման հարցերին: ԽՍՀՄ «Պատվո նշան» (1981), Ժողդ-ների բարեկամության (1988) շքանշաններ:

ՊԱԼՅԱՆ Գրիգոր (Գրիգոր ամիրա, 1767–1831), ճարտ.: *Պալի Քալֆայի* որդին, Սենեքերիմ *Պալյանի* եղբայրը, Կարապետ *Պալյանի* հայրը: 1788-ից՝ պալատ. ճարտ. Կ. Պոլսում: Կառուցել է Պեշիկթաշի թագավոր. և այլ սուլթան. պալատներ, Քասր-ը Ջեդիդը (Նոր դղյակ), Թերսանեի դղյակը (1786), Դավուդ փաշայի (1826–27), Մալթեփեի (1826) զորանոցները, Թոփհանեի մզկիթը (1823–26), Գումգափուի Սբ Աստվածածին եկեղեցին (1828) և այլ շին-յուններ:

ՊԱԼՅԱՆ Լևոն Նիկողոսի (Լևոն Բեյ, 1855–1925), ճարտ.: Նիկողոս *Պալյանի* որդին: Կ. Պոլսում աշխատակցել է հոր եղբոր՝ Սարգիս *Պալյանի* հետ:

ՊԱԼՅԱՆ Խորեն Հարությունի (1935–2007), լեզվաբան, շարականագետ, խմբավար: Լուսինե *Զաքարյանի* ամուսինը: 1991-ից՝ ԵՊՀ «Հայ տոհմիկ» երգչախմբի ղեկ.: Համերգ-դասախոսություններով ներկայացրել է հայ հոգևոր երգը: Հեղինակ է հեռուստատես. հաղորդաշարերի, համահեղ.՝ «Դասական գրաբարի հատընտիր» (2003) ժող-ի: Մայր աթոռ Սբ Էջմիածնի «Սբ Ներսես Շնորհալի» շքանշան (2006):

ՊԱԼՅԱՆ Կարապետ Գրիգորի, **Կարապետ ամիրա** (1800–1866), ճարտ.: Գրիգոր *Պալյանի* որդին: Պալատ. ճարտ. (փոխարինել է հորը): Կ. Պոլսում Պ-ի ամենագեղեցիկ կառույցը Դոլմաբահչեի պալատն է (1856): Գործերից են նաև Չիֆթե սարայլար (Ջույգ պալատ, Էյուբ), Ձեմիլի և Մյունիրեի անվ. սուլթան. ծովափնյա պալատները, Չրաղանի հին պալատը (1836, 1839, 1843), Իզմիթի իշխան. դղյակը, Եղդըզի հին ապարանքը, «Սուրբ Փրկիչ» հայոց ազգ. հիվանդանոցը (1834), Սկյուտարի ճեմարան-վարժարանը (1838, երկուսն էլ՝ Հովհաննես Սերվերյանի հետ), Քուրուչեշմեի Երևման Սբ Խաչ (1834), Պեշիկթաշի Սբ Աստվածածին (1838) և այլ եկեղեցիներ, Դոլմաբահչեի մզկիթը (1853–54, Նիկողոս Պալյանի հետ) ևն: Թուրք. կառ-յան «Պատվո նշան» շքանշան (1845):

ՊԱԼՅԱՆ Հակոբ Կարապետի (Հակոբ Բեյ, 1837–1875), ճարտ.: Կարապետ *Պալյանի* որդին, Սիմոն, Նիկողոս և Սարգիս *Պալյանների* եղբայրը: Պալատ. ճարտ. (1866-ից): Կ. Պոլսում կառուցել է Պեյքոզի, Թոքաթի, Սկյուտարի Գոշուեղոլուի Մայր թագուհու և 2 փաշաների ապարանքները, Աքսարայի Բերթենիյալ Մայր թագուհու մզկիթը, Չրաղանի, Բեյլերբեյի պալատները (եղբայրների հետ): Պ-ի միջոցներով է կառուցվել *«Արևելյան թատրոն»*-ը:

ՊԱԼՅԱՆ Նիկողոս Կարապետի, **Նիկողոս Բեյ** (1826–1858), ճարտ.: Կարապետ *Պալյանի* որդին, Հակոբ, Սարգիս և Սիմոն *Պալյանների* եղբայրը: Կ. Պոլսում Չրաղանի հին պալատում կառուցել է (հոր հետ) գեղակերտ գրադարան, նշանակվել պալատ. ճարտ.: Կառույցներից են նաև Դոլմաբահչեի պալատի թագադրության սրահը, Դիվանհանեն (1844–54), թատրոնը (1857), Պեյքոզի, Կեոքսուի, Ըխլամուրի (1849–56), Սկյուտարի Գոշուեղոլուի Աթիլե սուլթանի (1853) պալատները, Օրթագյուղի (1853/55), Չրաղանի և Դոլմաբահչեի մզկիթները (1852–54), նախագծել է Չրաղանի նոր պալատը (1857):

ՊԱԼՅԱՆ Սարգիս Կարապետի, **Սարգիս Բեյ** (1831–1899), ճարտ.: Կարապետ *Պալյանի* որդին, Հակոբ, Նիկողոս և Սիմոն *Պալյանների* եղբայրը: Կառուցել է Բեյլերբեյի (1864, Հակոբ Պալյանի հետ), Չրաղանի նոր (1863–66), Եղդըզի (1861–76, Սիմոն Պալյանի հետ), Գանտիլլի Աթիլե սուլթանի, Պալթալիմանի ծովափնյա պալատները, Պեշիկթաշի Սաքրուհյան վարժարանը (1868), Համիդիեի (Եղդըզ) աշտարակը ևն: Արժանացել է «Մէր Միմարը Տէվլեթ» (Պետության գլխ. ճարտ.) բարձրագույն կոչման: Մեջիդիեի Ա կարգի, Օսմանիեի Բ կարգի շքանշաններ:

ՊԱԼՅԱՆ Սենեքերիմ (Սենեքերիմ ամիրա, XVIII դ-ի կեսեր–1833), ճարտ.: *Պալի Քալֆայի* որդին, Գրիգոր *Պալյանի* եղբայրը: Կառույցներից հայտնի է Բեյազիդի Հրդեհի աշտարակը (1828):

ՊԱԼՅԱՆ Սիմոն Կարապետի (Սիմոն Բեյ, 1846–1894), ճարտ., մանրանկարիչ: Կարապետ *Պալյանի* որդին, Հակոբ, Նիկողոս և Սարգիս *Պալյանների* եղբայրը: Կառուցել է Մաչքայի զորանոցը (1861–62) և ոստիկանատունը, Եղդըզի ապարանքը (Սարգիս *Պալյանի* հետ): Մանրանկարներով զարդարել է իր, Գրիգոր ու Կարապետ Պալյանների կառույցները:

ՊԱԼՅԱՆ Տրդատ Սարգսի, **Կապետ** (1850–1923), բանասեր-մատենագետ, բանահավաք, եպս.: 1887–1910-ին՝ Կեսարիայի թեմի առաջնորդ: 1888-ին Կեսարիայի Սբ Կարապետ վանքում բացել է ժառանգավորաց վարժարանը (գործել է մինչև 1915-ը), որին կից հիմնադրել է գրադարան-թանգարան, հավաքել հին ձեռագրեր, հնատիպ գրքեր: Հեղինակ է «Սուրբ երկիր» (հ. 1, 1892), «Նշանագիրք հայոց» (1898), «Հայ աշուղներ, Զմիռնիա» (հ. 1–2, 1911–12), «Ժողովրդական առածներ եւ զանազան ասացուածք» (պր.1–2, 1912), «Հայ վանօրայք ի Թուրքիա» (1914) աշխ-ների, կազմել է «Յուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա» (հ. 1, տետր 1–2, 1892–93), «Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Սիօն եւ Ս. Լուսաւորիչ եկեղեցեաց ի Մաղնիսա» (1897) և այլ ձեռագրացուցակներ: Պ. կարևոր դեր է կատարել *Հակոբ Մեղապարտի* հրտ-յունների ժամանակը որոշելու հարցում:

ՊԱԼՈՒՆԻՆԵՐ, **Պալունիք**, հայ նախարար. տոհմ: Ժառանգ. տիրույթը՝ Վասպուրական նահանգ-ի *Պալունիք* գավ: Հիշատակում է պատմիչ Եղիշեն:

ՊԱԼՈՒՆԻՔ, **Պահլունիք**, գավ Վասպուրական նահանգ-ում՝ Արճիշակ և Վանա լճերի միջակայքում՝ Սարմետի գետահովտում: Հիշատակվում է միայն *«Աշխարհացոյց»*-ում:

«ՊԱԼՔԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ», ազգ., հասքաղ., գր. պարբերաթերթ (1915–18, 1920–1922, Ռուսչուկ, 1918–20, 1931–43, Սոֆիա): ՍԴՀԿ Բուլղարիայի շրջանի գործադիր հանձնաժողովի պաշտոնաթերթ: Խմբ-ներ՝ Ստեփանոս Սապահ-Գյուլյան, Էդուարդ Չոփուրյան, Գևորգ Գույումջյան, Հարություն Պողոսյան, Սիմոն Էքմեքչյան:

ՊԱԽՄՈՒՏՈՎԱ Ալեքսանդրա Նիկոլաևնա (ծ. 1929), ռուս. կոմպոզիտոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1984): Հեղինակ է «Պայծառություն» (1973) բալետի, վոկալ շարքերի («Գագարինի համաստեղությունը», 1971), երգերի («Երգ տագնապալի երիտասարդության մասին», «Մեղեդի», «Քաջշանք» ևն), կինոերաժշտության և այլ գործերի: ՀամԼԿԵՄ (1966), ԽՍՀՄ Պետ. (1975, 1982) մրց-ներ:

ՊԱԽՈՄՈՎԱ Լյուդմիլա Ալեքսեևնա (1946–1986), ռուս մարզուհի (գեղասահք): ԽՍՀՄ ս. վ. վ. (1970): ՌԴ վ. մ. (1984): Ձմեռ. օլիմպ. խաղերի (1976), աշխարհի և Եվրոպայի (1970–76), ԽՍՀՄ (1964–75) չեմպիոն (1964–66-ին՝ Վ. Ի. Ռիժկինի, 1969-ից՝ Ա. Գ. Գորշկովի հետ):

ՊԱԽՏԱՄՍՎԻ ԿՂԶԻ, 1. համանուն կղզեխմբի գլխ. կղզին *Նոր Երկրի* արլ. ափերի մոտ (ՌԴ): Տարածքը 21 *կմ²*: Հայտնագործել է ռուս. ծովագնաց Պ. Պախտուսովը (1800–1835) 1835-ին: 2. Նորդենշելդ կղզեխմբի ամենացածր արմ. կղզին՝ համանուն կղզիների խմբում: Տարածքը՝ 30 *կմ²*: Հայտնագործել է ռուս. Է. Վ. Տոլլի արկտիկ. արշավախումբը 1901-ին: Երկու կղզիներն էլ Կարայան ծովում են:

ՊԱԿ ՉԻ ՎՈՆ (1737–1805), կորեացի գրող, գիտնական-հանրագիտակ: Հեղինակ է խանմուռով գրած սատիր. նովելների, «Ժեխեյյան օրագիր» (26 գիրք, 1780-ական թթ.) ուղեգրությունների ժող-ի, փիլ. բանաստեղծությունների, նաև բնական գիտ-յուններին, տնտեսագիտ-յանը, փիլ-յանը վերաբերող աշխ-ների:

ՊԱԿԱՆԲԱՐՈՒ (Pakanbaru), ք. Ինդոնեզիայում, նվինգստ Սումատրա կղզում: Ռիաու պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 795,8 հզ. (2010): Նավթարդյունահանման կենտրոն է: Արտահանում են նավթ և բնական կաուչուկ: Զարգացած է գրոսաշրջությունը:

ՊԱԿԱՍՈՐԴ խոնավության, մթն-ի ոչ լրիվ հագեցածությունը ջր. գոլորշիներով.

բնորոշվում է տվյալ ջերմաստիճանում գոլորշու հագեցման և իրական ճնշումների տարբերությամբ:

ՊԱԿԱՍՈՐԴ ՋԱՆԳՎԱԾԻ, M զանգվածով փոխազդող մարմինների (մասնիկների) համակարգի և ազատ վիճակում նրանց զանգվածների տարբերությունը՝ $\Delta M = E_{ազ.}/c^2$, որտեղ c-ն լույսի արագությունն է: Պ. զ–ով որոշում են միջուկ. ռեակցիաների արդյունքում անջատվող էներգիայի մեծությունը:

ՊԱԿԻՍՏԱՆ, **Պակիստանի Իսլամական Հանրապետություն**, պետություն Հվ. Ասիայում: Սահմանակից է Աֆղանստանին, Չինաստանին, Հնդկաստանին և Իրանին: Տարածքը՝ 796 հզ. *կմ*^{2}, բն.՝ 163,8 մլն (2009): Մայրաքաղաքը՝ *Իսլամաբադ*: Պետ. լեզուները՝ ուրդու և անգլ.: Կառավարման ձևը՝ խառը հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը (Աժ և Սենատ): Բաժանված է 4 վարչ. պրովինցիաների, դաշն. մայրաքաղաք., 1 ցեղային և 2 հատուկ (Քաշմիրի՝ Պ–ին ենթակա հատվածում) տարածքների: Հավատացյալների մեծ մասը մահմեդական է: Անդամակցում է ՄԱԿ–ին, Ազգերի համագործակցությանը, ԱոտՀԿ–ին ևն: Զարգացող երկիր է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 2,6 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է տեքստիլ, հագուստ, գյուղմթերք, մետաղներ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ ևն: Դրամ. միավորը՝ պակիստանյան ռուփի:

Պ–ի տարածքում մ. թ. ա. III–II հզ–ամյակում երևան են եկել Խարապպայի քաղաքակրթության պետ. կազմավորումներ: Մ. թ. ա. VII–VI դդ–ում Պ–ի տարածքում առաջացել են հնդարիական առաջին պետությունները (Մադրա, Գանդհարա, Սաուվիրա ևն): Մ. թ. ա. VI–մ. թ. VI դդ–ում Պ–ի տարածքը կամ նրա մի մասը եղել է Աքեմենյանների, Ալեքսանդր Մակեդոնացու, Մաուրյաների, հելլենիստ. Հունա–հնդ., Քուշան., Սասանյանների, Գուպտերի, խիոնիտների կամ հեփթաղների թագավորության մեջ: Մ. թ. VIII դ–ից այն նվաճել են մահմեդ. պետությունները և տարածել մահմեդականություն: XVIII դ–ում կազմավորվել են խոշոր պետություններ Սինդում, Բելուջիստանում և Փենջաբում: XIX դ–ում Պ–ի տարածքը ներառվել է Բրիտ. Հնդկաստանի կազմի մեջ: 1947–ին կազմավորվել է Պ. պետությունը, որի մեջ են մտել Հինդուստանի հս–արլ–ը (Արլ. Բենգալիան) և հս–արմ–ը (Արմ. Փենջաբը, Սինդը, Հս–արմ. Սահման. նահանգ–ը, Բելուջիստանը), որոնց բնակչությունը հիմնականում մահմեդական էր: 1965 և 1971–ին Պ–ի և Հնդկաստանի միջև տեղի է ունեցել զինված հակամարտություն: 1971–ին Արլ. Պ–ում կազմավորվել է Բանգլադեշի պետությունը: 1988–ին անցում է կատարվել կառավարման քաղաքաց. ձևին, վերականգնվել են ժողովրդավար. իրավունքներն ու ազատությունները: 1999–ին իշխանությունը նորից անցել է զինվորականությանը (2002): 2000–ական թթ–ին պայքարը սրվել է արմատ. իսլամիստների և նրանց ընդդիմադիր քաղ. խմբավորման միջև: Պ. աշխարհի փոքրաթիվ այն երկրներից է, որոնք չեն ճանաչել Հայաստանի անկախությունը՝ խիստ ադրբեջանամետ դիրքորոշում դրսևորելով Արցախյան հիմնախնդրում:

ՊԱԿՍԵ, ք–նվինգստ Լաոսում՝ Մեկոնգ գետի ափին, Տյամպասակ պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 119, 8 հզ. (2010): Գղտ. շրջանների առևտր. կենտրոն է:

ՊԱԿՈՒԼԵ, **Պակուլե** (Pakule), Էլֆրիդա (1912–1991), լատիշ երգչուհի (կոլորատուր. սոպրանո): Լատվ. ԽՍՀ ժող. արտիստ (1947): 1940–56–ին (ընդմիջումով)՝ Լիտվ. ԽՍՀ ՕԲԹ–ի, 1941–44–ին՝ Իվանովոյի և Մոսկվայի, 1956–70–ին՝ Լիտվայի ֆիլհարմոնիաների մենակատարուհի (Լակմե՝ Լ. Դելիբի «Լակմե», Ջիլդա՝ Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1946):

ՊԱԿՈՒԼԱ (Pakula) Ալան (1928–1998), ամերիկացի կինոռեժ.: Օգտագործել է նկարահանման խիստ ձևեր, ձգտել դինամիկ. թեմաների, դրամատիկ. սուր իրավիճակների («Անպտուղ կկու», 1969, «Կլյուտ», 1971, «Պարալլաքս», 1974, «Սոֆիի ընտրությունը», 1982, «Սատանայի սեփականությունը», 1997, ևն):

ՊԱՀԱՆՈՂՅԱՅԻՄ սննդամթերքի, հիմն. եղանակներն են մանրէազերծումը, չորացումը, ապխտումը, թթվեցումը, աղադրումը, սառեցումը, Պ. շաքարով կամ քիմ. միջոցներով: Պ–մամբ ոչնչացնում են մանրէները (կամ ստեղծում են նրանց զարգացման անբարենպաստ պայմաններ) և որոշ ֆերմենտեր, որոնք երկարատև պահելու դեպքում փչացնում են սննդամթերքը:

ՊԱՀԱՆՈՂՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, սննդի արդ–յան ճյուղ, որը բուս. և կենդ. ծագման շուտ փչացող մթերքը (պտուղ, բանջարեղեն, կաթ, միս, ձուկ) երկար պահելու նպատակով մշակում և հիմնականում հերմետիկ փակ տարաներով թողարկում է կիսաֆաբրիկատներ և օգտագործման համար պատրաստի պահածոներ:

«ՊԱՀԱԿ», ազգ., գր., քաղ. պարբերաթերթ (1911–15, Փրովիդենս, 1915–21, Բոստոն): Վերակազմյալ հնչակյան կուսյան Ամերիկայի շրջանակի պաշտոնաթերթ: Խմբ–ներ՝ Հրաչ Երվանդ, Արշակ Տեր–Մարկոսյան, Վահան Քյուրքճյան, Երվանդ Մեսիայան: 1921–ին միացել է *«Ազգ»*–ին և կոչվել «Ազգ–Պահակ», 1922–ից՝ *«Պայքար»*:

«ՊԱՀԱԿ», հաս–քաղ. օրաթերթ (1920, Թիֆլիս): ՌԿ(բ)Կ Կովկասի երկրկոմի պաշտոնաթերթ: Խմբ–ներ՝ Դրաստամատ Տեր–Սիմոնյան, Վահան Երեմյան:

«ՊԱՀԱԿ», ազգ., գր., հաս–քաղ. շաբաթաթերթ (1935–41, 1944–46, Բուխարեստ): ՀՕԿ–ի կենտր. վարչության, 1945–ից՝ ռումինահայ «Հայաստանյան ճակատ» կազմ–յան կենտկոմի պաշտոնաթերթ: Խմբ.՝ Հարություն Պապոյան: «Պ.»–ի շարունակությունն է *«Հայապահպանման ճակատ»* շաբաթաթերթը:

ՊԱՀԱՆԳ, դաշն. նահգ (սուլթանատ) Մալակա թ–կղզու արլ–ում՝ Մալայզիայում: Տարածքը՝ 35,9 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,5 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ Կուանտան: Տնտ–յան հիմն. ճյուղը գղտ–յունն է:

ՊԱՀԱՆՋԱՐԿ ԵՎ ԱՌԱՋԱՐԿ, շուկայական տնտ–յան կատեգորիաներ: Պահանջարկը դրամ. արտահայտություն ունեցող և վճարամիջոցներով ապահովված հաս. ***պահանջմունքն*** է: Առաջարկը շուկայում իրացման համար նախատեսված ապրանքների ու ծառայությունների ամբողջությունն է: Առաջարկը պահանջարկ է ձևավորում արտադրված ապրանքների տեսականու և դրանց գների միջոցով: Պահանջարկով են որոշվում ապրանքների առաջարկի ծավալն ու կառուցվածքը:

ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔ, մարդու, սոցիալ. խմբի, առհասարակ հաս–յան կենսագործունեությանը և զարգացմանն անհրաժեշտ որևէ բանի կարիք, ակտիվության ներքին խթան: Անհատի սոցիալ., հոգևոր և կենս. Պ–ները ձևավորում են արժեք. կողմնորոշիչների աստիճանակարգություն:

ՊԱՀԱՐԵ (Պետրոսյան Հայկ Սեդրակի, 1895–1968), բանաստեղծ, դերասան: ՎԽՍՀ վաստ. արտիստ (1943): 1911–ից՝ Թիֆլիսի հայկ. թատերախմբի դերասան (Քաջ Նազար՝ Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար», Գիքո՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», Շմագա՝ Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», ևն): Հեղինակ է «Գյուղերի կանչը» (1925), «Գեղարքունիք» (1928), «Հայրենիք» (1958) բանաստեղծությունների ժող–ների, «Ստեփան Քափանակյան» (1962) մենագրության, «Թատերական հուշեր» (1960) գրքի:

ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐ, **պահեստակաց վնասատուներ**, կենդանիներ, որոնք փչացնում կամ ոչնչացնում են պահեստավորված և փոխադրվող հացահատիկը, հատիկ. մթերքը, չոր մրգերը, բանջարեղենը, դեղանյութերի, կաշվի, ծխախոտի հումքը: Առավել վտանգավոր են ալյուրի, երկարավուն և սովոր. մազապատ տզերը, ամբար. և բրնձի երկարակնճիթը, գող ձնացողը, Սուրինամի ալրակերը, մավրիտան. բզեզը, ալյուրի մեծ և փոքր բզեզները, հվ. ամբար. և ալյուրի հրաթիթեռները, ամբար. ցեցը, հացահատիկ. ցեցը, թռչուններից՝ տնային աղավնին և ճնճղուկը, կրծողներից՝ մկները, դաշտամկները ևն: Պ. վ. կարող են տարածել տարբեր հիվանդություններ:

ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՈՒԺԵՐ զորքերի, զորքի տեսակ, որը խաղաղ պայմաններում պահվում է կրճատ տարբերակով, իսկ պատերազմի ժամանակ ծավալվում է: Եղել են XIX դ–ի 2–րդ կես–XX դ–ում Ռուսաստանում, Ֆրանսիայում, Ավստրո–Հունգարիայում: Կիրառվում են նաև ԱՄՆ–ի, Մեծ Բրիտանիայի և այլ երկրների ժամանակակից ԶՈՒ–ում:

ՊԱՀԵՍՏԱՏՈՒԿ, **փամփշտակալ**, հրազենի փամփուշտների տարողություն՝ հանդերձված հատուկ մեխանիզմով (հիմնականում՝ զսպանակ.)՝ փամփուշտները հերթով փամփշտանոց մատուցելու համար:

ՊԱՀԵՍՏԱՐԱՆ, տարողություն (վերգետնյա կամ ստորգետնյա) գազեր և հեղուկներ պահելու համար: Պատրաստում են հիմնականում մետաղից և երկաթբետոնից, հազվադեպ՝ քարից, պոլիմեր. և այլ նյութերից:

ՊԱՀԼԱՎԱԿԱՆ ԳԻՐ, *պահլավերենի* համար օգտագործված ***արամեական գիրը***: Ստեղծվել է մ. թ. ա. III դ–ում: Գործածվել է 2 տարբերակով՝ արձանագրություններ–ի և գրքային: Գրությունն աջից ձախ է:

ՊԱՀԼԱՎԵՐԵՆ, **միջին պարսկերեն**, Սասանյան հարստության պետ. լեզուն (III–VII դդ.): Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի հնդիրան. ճյուղի իրան. խմբին: Բաժանվել է հին (պարթևերեն, մ. թ. ա. 250–մ. թ. 226) և նոր (սասանյան Պ., 226–642) շրջանների: Ավանդվել է բազմաթիվ արձանագրություններով ու գրքերով:

ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐ, **Պարթևականք**, **Պարթևք**, իշխան. տոհմ միջնադար. Հայաստանում: Սերել են Պարթևաց

Արշակունիների տոհմածյուղերից՝ Սուրենյան և Կարենյան Պահլավիկներից: Վերջինների շառավիղներից Կամսարը դարձել է *Կամսարականներ* տոհմածյուղի հիմնադիրը: Սուրենյան Պահլավիկներից Անակի որդին՝ Սուրենը, սկրտվել է Գրիգոր անունով, դարձել նոր տոհմի հիմնադիրը (տես *Գրիգոր Ա Լուսավորիչ*): Տոհմածյուղի 5 ներկայացուցիչներ նույնպես ժառանգ. իրավունքով աթոռակալել են որպես Հայոց կաթողիկոսներ: Պ–ի Գրիգորյան տոհմածյուղն արական գծով սպառվել է *Սահակ Ա Պարթևի* մահով: Կամսարական Պ. IX դ–ի 1–ին կեսից հետո չեն հիշվում:

ՊԱՀՊԱՆԻՉ ՅՈՒՂԵՐ, հակակոռոզային հավելանյութերով նավթայուղեր: Կիրառվում են նաշ–ների ներքին խոռոչները, կոմպրեսորները, ռեդուկտորները կոռոզիայից պաշտպանելու համար՝ դրանց երկար պահպանման և փոխադրման ժամանակ:

ՊԱՀՊԱՆԻՉ ՔՍՈՒԻՔՆԵՐ, պլաստիկ քսուքներ (հիմնականում՝ նավթայուղեր՝ հակակոռոզային հավելանյութով՝ պարաֆինով կամ ցերեզինով թանձրացրած)՝ մետաղե առարկաները մթն. կոռոզիայից տևականորեն պաշտպանելու համար:

ՊԱՀՊԱՆՄԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ, ֆիզ. օրենքներ, ըստ որոնց՝ որոշ ֆիզ. մեծությունների արժեքներ չեն փոխվում ժամանակի ընթացքում: Կարևորագույն Պ. օ., որ ճշգրիտ են ցանկացած մեկուսացած համակարգի համար, էներգիայի, իմպուլսի, շարժման քանակի մոմենտի, էլ. լիցքի Պ. օ. են: Կան նաև մոտավոր Պ. օ., որոնք ճշգրիտ են գործողությունների որոշակի շրջանակի համար, օր.՝ *զույգությունը*:

ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ Մեծ Բրիտանիայում (The Conservative Party), երկրի 2 գլխ. կուսյուններից մեկը: Կազմավորվել է 1867–ին՝ *տորիների* կուս–յան հիմքի վրա: ԵՀՊ–ից հետո իշխան. կուս–յուն՝ 1951–64, 1970–74, 1979–97–ին և 2010–ից: Առաջնորդը՝ Թ. Մեյ (2016–ից):

ՊԱՀՊԱՆՎՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՎ ԲՈՒՅՍԵՐ, տեսակներ կամ խմբեր, որոնց որսը լրիվ արգելված կամ սահմանափակված է: Նրանց քանակի վերականգնման և գենոֆոնդի պահպանման համար ստեղծվում են արգելոցներ, արգելավայրեր նաև: Սիկսվել են օրենսդր. ակտեր՝ բուս. և կենդ. աշխարհների անհետացման ենթակա վայրի տեսակների միջազգ. առևտրի մասին:

ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԱՐԺՈՒԹՔ, օտարերկրյա արժույթ, որը երկրի կենտր. բանկը կուտակում է միջազգ. հաշվարկներ կատարելու համար:

ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ, ԲՀ կապիտալի մաս, որը նախատեսված է հնարավոր կորուստների ծածկման, հիմն. կապիտալի արժեզրկման դեպքում նրա համալրման, շահութաբաժինների վճարման (եթե ընթացիկ շահույթն անբավարար է) համար: Ձևավորվում է շահույթից ամենամյա մասհանումների հաշվին:

ՊԱՀՔ, պաս, պահեցողություն, ծոմ, որոշ կրոններում ուտելիքի կամ նրա առանձին տեսակների համար որոշակի ժամկետով սահմանված արգելք, կերակուրներից լրիվ կամ մասնակի հրաժարում: Պ–ի մյուս իմաստն ինքնաքննության շրջանն է, հատկապես՝ *Մեծ պահքի* շրջանը, երբ հավատացյալները ոչ միայն կերակուրներից են հրաժարվում, այլև հեռու են մնում մարմն. հաճույքներից, ապաշխարությամբ ու աղոթասացությամբ չափավոր, զուսպ կյանք վարում: Քրիստ., մահմեդ., հուդայական կրոններում Պ. հավատի ամրապնդման միջոց է, ունի նաև մաքրագործության և ճգնակեցության նշանակություն:

ՊԱԼԵՍՏԻՆ (Palaistinê), պատմ. մարզ Արմ. (Առաջավոր) Ասիայում: Մ. թ. ա. III հզ–ամյակում Պ–ի տարածքում հիմնավորվել են քանանացիները: Մ. թ. ա. XII դ–ում մարզի ծովափնյա շրջանները զավթել են փղշտացիները (երբ.՝ փելիշտիմ, որից էլ առաջացել է Պ. անվանումը): XI դ–ում հրեաները հիմնադրել են Իսրայել–Հուդայի թագավորությունը, որը 928–ին տրոհվել է *Իսրայելի* և *Հուդայի թագավորությունների*: Մ. թ. ա. 539–ից Պ. մտել է Աքեմենյանների, 332–ից՝ Ալեքսանդր Մակեդոնացու, III–II դդ–ում՝ Պտղոմեյանների (301–ից), ապա՝ Սելևկյանների (200–ից) տերության մեջ: Մ. թ. ա. I դ–ի 1–ին կեսին Պ–ի մի մասը՝ Տիգրան Բ Մեծի, մ. թ. ա. 63–ից ողջ մարզը Հռոմի գերիշխանության տակ էր: 395–640–ին եղել է Բյուզանդիայի կազմում, ապա գրավել են արաբները, խաչակիրները (տես *Երուսաղեմի թագավորություն*), 1516–ին՝ օսմ. թուրքերը, 1917–ին՝ անգլ. զորքերը: 1920–47–ին եղել է Մեծ Բրիտանիայի մանդատ. տարածք:

1947–ի նոյեմբ. 29–ին ՄԱԿ–ի Գլխ. ասամբլեայի որոշմամբ վերացվել է անգլ. մանդատը, և Պ–ի տարածքում ստեղծվել են 2 անկախ պետություններ՝ հրեական ու արաբ.: Երուսաղեմն առանձնացվել է իբրև ինքնուրույն վոմ՝ ՄԱԿ–ի հսկողությամբ: 1948–ի մայիսի 14–ին Պ–ի տարածքի մի մասում ստեղծվել է *Իսրայել* պետությունը: 1948–49 և 1967–ի արաբա–իսրայել. պատերազմների արդյունքում Իսրայելը նվաճել է նախկին ենթամանդատ. տարածքը, որը նախատեսվել էր արաբ. պետության համար: 1988–ին Պ–ի Ազգ. խորհրդի նստաշրջանը ԼՊ–ի ազատագրության կազմ–յուն (ՊԱԿ) բարձրագույն մարմինլ Պ. հռչակել է անկախ պետություն: 1993–ի սեպտ–ին Իսրայելը և ՊԱԿ–ը ստորագրել են Հռչակագիր խնդրի կարգավորման սկզբունքների վերաբերյալ, որի հիման վրա Գազայի հատվածում և Հերբրոն ք–ի գոտում (Հորդանան գետի արմ. ափ) 1994–ի մայիսին ստեղծվել է Պ–ի ժամանակավոր ինքնավարություն. սահմանվել է անցում. շրջան (5 տարի)՝ մինչև ՄԱԿ–ի ԱԽ ընդունած բանաձևի հիման վրա Պ–յան հիմնախնդրի կարգավորումը: 1996–ին ընտրվել է Պ–ի օրենսդիր խորհուրդը, կազմվել է կառ–յուն՝ Պ–ի ազգ. վարչություն:

Պ–ի տարածքում հայեր ապրել են վաղնջական ժամանակներից, սակայն նրանց նկատելի հոսքն սկսվել է քրիստոնեության տարածման առաջին դարերից, իսկ IV դ–ում նրանք Երուսաղեմում կառուցել են եկեղեցիներ ու վանքեր: Երուսաղեմ եկած ուխտավոր հայերի մի մասը նույնպես մշտ. բնակություն է հաստատել այնտեղ: Հետագայում Երուսաղեմում և Պ–ի այլ բնակավայրերում գոյացել է նաև առևտրականներից և արհեստավորներից բաղկացած հայ աշխարհիկ համայնք: Երուսաղեմից բացի՝ հայերը բնակվել են նաև Ակկայում, Բեթղեհեմում, Սալթում, Գազայում, Նաբլուսում ևն: Հայերի թիվն այստեղ նվազել է օսմ. տիրապետության հաստատումից (1517) հետո: 1615–ին Երուսաղեմում եղել է 12 հայ ընտանիք: XIX դ–ում հայ համայնքն սկսել է ստվարանալ: 1800–ին Երուսաղեմում բնակվել է 500, 1850–ին՝ 550, 1870–ին՝ 640 հայ: Պ–ի հայ համայնքը համալրվել է 1894–96–ին և 1909–ին հայկ. ջարդերից փրկված հայերով: 1910–ին Երուսաղեմում ապրել է շուրջ 1300 հայ: 1918–ին երկրամասի՝ բրիտ. մանդատի տակ անցնելուց հետո Երուսաղեմում ապաստան է գտել ավելի քան 10 հզ. հայ: 1920–ին հայերի թիվը հասել է շուրջ 20 հզ–ի: 1922–ին ՀԲԸՄ հովանավորությամբ Երուսաղեմ են բերվել 1000 հայ որբեր, որոնց մի մասը 1924–ին ներգաղթել է Հայաստան: Պ–ից զգալի թվով հայեր են ներգաղթել նաև 1947–ին:

ՊԱԼԵՍՏԻՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, մասնակի ճանաչված (2015–ին՝ 136 երկիր) պետություն Հվ–արմ. Ասիայում: Կազմված է Արմ. Ափից, Գազայի շրջանից և Արլ. Երուսաղեմից: Սահմանակից է Հորդանանին, Եգիպտոսին (Գազայի շրջանում) և Իսրայելին: Տարածքը՝ շուրջ 6 հզ. *կմ*^{2}, բն.՝ 4,8 մլն (2009): Մայրաքաղաք է հռչակել Արլ. Երուսաղեմը, սակայն պետ. վարչակազմը դեռևս Ռամալլահում է: Պետ. լեզուն՝ արաբ.: Բաժանված է 16 վարչ. միավորների: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ Ազգ. խորհուրդը: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են: Աղքատ երկիր է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով շուրջ 2 հզ. ԱՄՆ դոլար է (2012): Արտահանում է տեքստիլ, մրգեր և բանջարեղեն, ձիթապտուղ, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, շինանյութ ևն: Դրամաշրջանառության մեջ օգտագործում են եգիպտ. ֆունտը, իսրայել. շեքելը և հորդանան. դինարը: Անցյալի պատմության մասին տես *Պաղեստին*:

2007–ին Պաղեստինի ազգ. ազատագրության շարժումը (FATH, առաջնորդ՝ *Մահմուդ Աբբաս*) և արմատ. ՀԱՄԱՍ (HAMAS) կազմ–յունը կազմել են դաշն. կառ–յուն, որը, սակայն, ծագած տարաձայնությունների և հակամարտության պատճառով հրաժարական է տվել: Երկրում սկսվել են արյունահեղ բախումներ: Մահմուդ Աբբասին հաջողվել է վերահսկել Հորդանան գետի արմ. ափի հատվածն ու կազմել նոր կառ–յուն: ՀԱՄԱՍ–ը վերահսկողություն է հաստատել Գազայի շրջանում: 2012–ին Պ. Պ. ստացել է ՄԱԿ–ի դիտորդ անդամ երկրի կարգավիճակ (138 կողմ ձայներով): ՄԱԿ–ի ԱԽ–ի երկրներից 3–ի (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա)՝ որոշմանն ընդդիմանալու պատճառով երկրի ամբողջ. ճանաչումը հետաձգվում է:

Արաբա–իսրայել., պաղեստինա–իսրայել. հակամարտությունների հետևանքով Պ. Պ–ից բազմաթիվ հայեր հեռացել են Եվրոպա, ԱՄՆ և Մերձ. Արևելքի այլ երկրներ:

ՊԱՂԻՆ, Գայլ (վերին հոսանքում՝ Լէչեգ, միջինում՝ Քղի, ստորինում՝ Փերի), գետ Հայկ. լ–աշխարհում, Մնձուրի ձախ վտակը (Արածանիի համակարգ): Երկ.՝ մոտ 240 *կմ*: Սկիզբ է առնում Մեղեդուղխ (Շակշակ) լ–ների արլ. լանջից: Կերանի ջրամբարի կառուցումից հետո թափվում է նրա մեջ:

ՊԱՂԻՆ, բերդ (այժմ՝ ավերակ) Ծոփք նահանգ–ի Պաղնատուն գավ–ում՝ Արածանիի Պաղին վտակի աջ ափին: Ավերակները թուրքերն անվանում են «Բաղին կալեսի»:

Ենթադրվում է, որ հիմնադրվել է մ. թ. ա. IX–VIII դդ.-ում: Եղել է Ծոփաց իշխանության պաշտպ. կարևոր ամրություններից: Բերդատեղիի մերձակա Պաղին (Բաղին) հայաբնակ գ-ի բնակիչները տեղահանվել են 1915-ին:

ՊԱՂՆԱՏՈՒՆ, Պաղնա գավառ, Խոզան, գվռ Ծոփքի նահանգ-ում՝ Արածանիի Պաղին վտակի ավազանում: Կոչվել է իր գլխ. բերդերի՝ *Պաղինի* ու Խոզանի անուններով: Մեծ Հայքի բաժանումից (387) հետո անցել է Բյուզ. կայսրությանը: Պ.-ում եղել է եպիսկոպոս. թեմ: 1071-ին տիրել են սելջուկ-թուրքերը: XIX դ.-ի վերջից մտել է Դիարբեքիր նահանգ-ի Բալու գվռկ-ի մեջ: Պ.-ի հայ բնակիչները տեղահանվել և զոհվել են 1915-ին:

ՊԱՂՐԱՍ, Բաղրաս, բերդ Ամանոսի լ.-ներում՝ Ասորվոց դռան մոտակայքում՝ Անտիոքի գվռկ.-ում: XII դ.-ում Անտիոքի խաչակիր ասպետներից ազատագրել ու սահմանապահ բերդ է դարձրել Կիլիկիայի հայոց իշխանապետ *Թորոս Բ*-ն: 1189–93-ին հիմնովին վերակառուցել է *Լևոն Բ* Մեծագործը: XIV դ.-ի վերջին և XV դ.-ի սկզբին Պ. դեռևս կանգուն է եղել: XVI դ.-ում նվաճել են օսմ. թուրքերը:

ՊԱՄԻՐ, լեռն. համակարգ Միջին Ասիայում, հիմնականում՝ Տաջիկստանում, արլ. և հվ. մասերը՝ Չինաստանի և Աֆղանստանի սահմաններում: Ամենաբարձր կետը Քաշքարի լ.-շղթայի Կոնգուր (7719 *մ*) գագաթն է Պ.-ի արլ.-ում: Արմ. Պ. մասնատված է գետերի խորը կիրճերով: Արլ. Պ. ունի հղկված ռելիեֆ (հովիտների և գոգհովիտների հարթ հատակ), աոլգն բարձր.՝ 3500–4500 *մ*, գագաթները՝ 6000 *մ* և ավելի: Սառցադաշտերի տարածքը (Տաջիկստանի սահմաններում)՝ 7500 *կմ*²: Խոշոր սառցադաշտերն են Ֆեդչենկոն և Գրում-Գրիժիմայլոն: Արլ. Պ.-ում գերակշռում են բարձրլեռն. անապատները, արմ.-ում՝ տափաստանների տեղամասերը, գետահովիտներով տարածված են անտառները: Զարգացած է արտագնա անասնապահությունը:

ՊԱՄԻՐԱ-ԱԼԱՅ, լեռն. մարզ Միջին Ասիայում, որը միավորում է Ֆերգանայի հովտից հվ. լ.-շղթաները: Բաղկացած է 3 հիմն. մասերից՝ Հիսարա-Ալայան, Հվ-տաջիկ. լ.-ներ և *Պամիր*:

ՊԱՄԻՐՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, հնդեվրոպ. լեզվաընտանիքի հնդիրան. ճյուղի իրան. խմբի լեզվախումբ: Ունեն 4 ճյուղ՝ շուգնանա-ռուշանական (շուգնաներեն, ռուշաներեն, բարտանգերեն, օրոշորերեն, խուֆերեն, սարիքոլի), յազգուլամերեն, վախաներեն, իշկաշիմերեն (մունջանի):

ՊԱՄՊԱ (pampa), **պամպասներ** (իսպ.՝ pampa, հոգնակի թվով՝ pampus), 1. բնամարզ Արգենտինայի արլ.-ում: Բնական բուսածածկույթ գրեթե չի պահպանվել: 2. Հարթավայր. մարզ Հվ. Ամերիկայում: Գերակշռում են խոտաբույսերը: 3. Հվ. Ամերիկայի (հիմնականում՝ Արգենտինայում) մարզագետն. տափաստանների բուսածածկույթը (մոլախոտեր՝ ուղտափուշ, փետրախոտ, հասկաքիստ, խծմախոտ, մորմ, աղավնի ևն): Բնական բուսածածկույթը խիստ փոփոխվել է, շատ տեղերում գրեթե չի պահպանվել կենդանիների անկանոն արածեցման հետևանքով: Կենդանիներից բնորոշ են սպիտակապոչ եղջերուն, ամերիկ. պուման, պամպասյան կատուն ևն:

ՊԱՄՊԱ ԴԵԼ ՏԱՄԱՐՈՒԳԱԼ (Pampa del Tamarugal), անապատ. հարթավայր Չիլիում՝ Ատակամա անապատից հս: Բարձր.՝ 900–1200 *մ*: Կան հազվադեպ չորասեր ծառատեսակներ:

ՊԱՄՊԵՐՈ, հվ. կամ հվ-արմ. սառը մրրկային քամի (երբեմն՝ անձրևի հետ) Արգենտինայում և Ուրուգվայում: Կապված է անտարկտիկ. օդի ներխուժման հետ:

ՊԱՄՓԻԼԻԱ (Pampilia), **Պամփյուլիա**, պատմ. մարզ Փոքր Ասիայի հվ.-ում (այժմ՝ Թուրքիայի Անթալյա նահանգ-ում): Մ. թ. ա. VI դ.-ից՝ Աքեմենյանների, IV դ.-ի 2-րդ կեսին՝ Ալեքսանդր Մակեդոնացու, III–II դդ.-ում՝ Պտղոմեյանների, Սելևկյանների, Պերգամոնի պետության (մ. թ. ա. 133-ից վերջինի հետ դարձել է հռոմ. տիրույթ), 395-ից՝ Բյուզանդիայի կազմում: XII դ.-ից Պ.-ի արլ. մասը մտել է Կիլիկիայի հայկ. պետության կազմի մեջ:

ՊԱՄՖԼԵՏ (անգլ.՝ pamphlet), **պարսավագիր**, հրապարակախոս. երկ, հաս-քաղ. կյանքի դատապարտելի երևույթները, առանձին ուժերի վարքագիծը մերկացնող, սուր քննադատ. գրվածք: Պ.-ում երգիծանքը հաճախ զուգորդվում է հրապարակախոս. և գեղ. տարրերով: Կարող է արտահայտվել գր. տարբեր ժանրերում (պիես-Պ., վեպ-Պ. ևն): Պ.-ի օրինակ է Մ. Նալբանդյանի «Երկու տողը» ուղղված հայ իրականության հետադիմ. ուժերին (Հ. Ձամուռճյան, Գ. Այվազովսկի), Ե. Չարենցի «Հանգուցյալ պարոնը կամ Պարոն հանգուցյալը»:

ՊԱՅԱՋՅԱՆ (Պայազատ) Էվերտ Խաչատուրի (ծ. 1940), կինոգետ, սցենարիստ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1987): Հեղինակ է «Կատակերգականի եզրերը» (1982) աշխ., «Ներսես Հովհաննիսյան» (1985), «Ռուբեն Գևորգյանց» (1987) գրքույկների, «Օտար խաղեր» (1987), «Պատանդներ» (1991) գեղ., «Ռայզման» (1996), «Պիրև» (1999) վավերագր. և այլ ֆիլմերի սցենարների: Լյումիեր եղբայրների միջազգ. կփ բրոնզե մեդալ (1998, Մոսկվա):

ՊԱՅԵՈՒԼՍ (Peierls) Ռուդոլֆ Էռնստ (1907–1995), անգլիացի ֆիզիկոս-տեսաբան: ՌԳԱ արտ. անդամ (1988): Աշխ.-ները վերաբերում են պինդ մարմնի քվանտ. տեսությանը, տարր. մասնիկներին և միջուկ. ֆիզիկային: Մագնետիզմի քվանտ. տեսության հիմնադիրներից:

ՊԱՅԵՐ (Payer) Յուլիոս (1842–1915), ավստրիացի բևեռախույզ: 1872–74-ին Կ. Վայպրեխտի հետ ղեկավարել է «Տեգետհոֆ» նավի արշավախումբը և հայտնաբերել *Ֆրանց Իոսիֆի Երկիրը* (1873):

ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐ, հպական բաղաձայն հնչյուններ: Պ. արտաբերելիս բերանում ստեղծված լիակատար արգելքը հաղթահարվում է օդի պոռթկմամբ: Հայ-ի Պ., ըստ արտաբերման տեղի, լինում են շրթնային (բ–պ–փ), ատամնային (դ–տ–թ) և հետքմային (գ–կ–ք):

ՊԱՅԹԱԿԵՆԻ (Colutea), բակլազգիների ընտանիքի տերևաթափ, երբեմն՝ փշերով ծածկված թփերի ցեղ: Հայտնի է մոտ 25 տեսակ, ՀՀ-ում՝ 3, Սյունիքի մարզի և ԼՂՀ ստորին ու միջին լեռն. գոտիներում: Կամրովի Պ. գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՊԱՅԹՅՈՒՆ, մեծ քանակի էներգիայի անջատումը սահմանափակ ծավալում՝ կարճ ժամանակահատվածում: Առաջացնում է ճնշման կտրուկ աճ և *պայթյունի ալիք*, որը, տարածվելով շրջակա միջավայրում, կարող է առաջացնել ավերածություններ: Պ. տեղի է ունենում քիմ. (հիմնականում՝ պայթուցիկ նյութեր), ներմիջուկ. (միջուկ. պայթյուն), էլեկտրամագնիս. (կայծային պարպում, լազեր, կայծ ևն), մեխ. (երկրի մակերևույթի վրա երկնաքարի անկում, հրաբխի ժայթքում ևն) էներգիաների հաշվին: Նախատեսված Պ.-ներ իրականացվում են հիմնականում արդ. պայթուցիկ նյութերով և կիրառվում են տարբեր տեխնոլոգ. շարժընթացներում:

ՊԱՅԹՅՈՒՆԱՅԻՆ ԱՅՐՈՒՄ, պայթյուն. փոխարկում (օր.՝ կայծով կամ բոցով հարուցված ծխացող և անծուխ վառոդի պայթյունը), որն ընթանում է մի քանի հարյուր *մ/վ* արագությամբ:

ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, նյութի կամ նյութերի խառնուրդի պայթման կամ ճառագայթման հատկությունը տաքացման, շփման, էլ. լիցքաթափման, հարված. ալիքի, էլեկտրամագնիս. ճառագայթման ազդեցությամբ: Պայթյունավտանգ են ացետիլենը, օզոնը, հիդրազինը, բազմաթիվ գերօքսիդներ, ազիդները, ազոմիացությունները ևն, ինչպես նաև այրվող նյութերի խառնուրդները՝ օդի և այլ օքսիդիչների հետ:

ՊԱՅԹՅՈՒՆԻ ԱԼԻՔ, հարված. ալիք, որն առաջանում է *պայթյունի* ժամանակ: Պ. ա-ի ճակատը պայթման կենտրոնից շարժվում է ձայնի արագությունը գերազանցող արագությամբ. այդ ընթացքում ճակատի մակերեսը գնալով մեծանում է, իսկ արագությունն ու ինտենսիվությունը նվազում են:

ՊԱՅԹՈՒՅԻԿ ՆՅՈՒԹԵՐ, հատուկ քիմ. միացություններ կամ խառնուրդներ, որոնք արտաքին ազդակի (հարված. տաքացում ևն) ներգործությամբ ունակ են առաջացնելու մեծ արագությամբ (*կմ/վ*) ինքնատարածվող քիմ. ռեակցիաներ՝ անջատելով մեծ ծավալի գազանման արգասիքներ ու ջերմություն:

ՊԱՅԹՈՒՅԻՉՆԵՐ, զինամթերքի (ռումբ, հրետան. արկ, ական, հրթիռ) գործարկման սարք: Ըստ գործողության սկզբունքի՝ լինում են հպական, հեռակառավարման, ոչ հպական ևն, նաև համակցված: Առաջին պարզագույն Պ. ստեղծել է Ա. *Նորվը*՝ իր հայտնագործած դինամիտը պայթեցնելու համար:

ՊԱՅԼՈՒԹՅՈՒՆ, արքունի գործակալություն Կիլիկիայի հայկ. պետության մեջ, տես *Խնամակալություն*:

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, Վարդավառ, Այլակերպություն, ՀԱԵ 5 *Տաղավար* տոներից: Համաձայն Ավետարանի՝ Քրիստոսն իր քարոզչ. գործունեության 3-րդ տարվա ամռանը, իր մահվան և հարության մասին առաքյալներին հայտնած կանխասացությունից 6 օր անց, Պետրոս, Հակոբոս և Հովհաննես առաքյալների հետ բարձրացել է Թաբոր լ.՝ աղոթելու: Աղոթքի պահին Հիսուսը նրանց առաջ պայծառակերպվել է: Ի հիշատակ այս իրադարձության՝ եկեղեցին սահմանել է տոն, որը հայերի մեջ տարածված է «Վարդավառ» կամ «Այլակերպություն» անվանումներով:

ՊԱՅԾԱՌԵ (Տրդատյան Վարշամ, 1859–1904), աշուղ: Հեղինակ է սիր., սոցիալ., ազգ., հայրենասիր. («Խոսեք Հայաստանի լեռներ», «Ա՛ռ սոխակն վանդակված» ևն), հրապարակախոս., այլաբան. երգերի, գազելների, դաստանների, մուհամմաների:

ՊԱՅԾԱՌՈՒԹՅՈՒՆ, լուսատու մարմինների բնութագիր. հավասար է որևէ ուղղությամբ լույսի ուժի և այդ ուղղությանն ուղղահայաց հարթության վրա

լուսավորվող մակերևույթի պրոյեկցիայի մակերեսի հարաբերությանը: ՄՄՀ-ում չափվում է *Կդ/մ²*-ով:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ (քաղհրավունք), 2 և ավելի անձանց համաձայնությունը՝ քաղաքաց. իրավունքների ու պարտականությունների (փոխառություն, առքուվաճառք, կապալ ևն) սահմանման, փոփոխման կամ դադարեցման մասին:

Պ. միջազգային, պետությունների կամ միջազգ. իրավունքի այլ սուբյեկտների միջև համաձայնություն, որը սահմանում է քաղ., տնտ. կամ այլ հարաբերությունների նրանց փոխադարձ իրավունքներն ու պարտավորությունները: Բազմակողմ Պ-երը կարող են լինել բաց (դրանց իրավունք ունեն միանալու այլ պետություններ) և փակ (միավորումը հնարավոր է միայն պայմանագրի մասնակիցների համաձայնությամբ):

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԽՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ, փաստաթուղթ, որն իրավարանորեն ձևակերպել և ամրապնդվել է ՌՍՖԽՀ, Ուկր. ՍԽՀ, ԲՍԽՀ, ԱՍՖԽՀ միավորումը մեկ միասն. պետության՝ ԽՍՀՄ կազմի մեջ: Ընդունվել է 1922-ի դեկտ. 29-ին՝ այդ հանրապետությունների կողմից ընտրված լիազոր պատգմ-ների խորհրդաժողովներում և ԽՍՀՄ կազմավորման հռչակագրի հետ հաստատվել խորհուրդների I համագումարում՝ 1922-ի դեկտ. 30-ին: ԽՍՀՄ-ը գոյատևել է մինչև 1991-ի դեկտ. 21-ը:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ, պատիժը պայմանականորեն չկիրառելը. դատավճռով նշանակված պատիժը դատապարտյալի նկատմամբ ի կատար չածելը՝ պայմանով, որ նա սահմանված փորձաշրջանում (1–5 տարի ժամկետով) նոր դիտավորյալ հանցագործություն չի կատարի:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՌԵՖԼԵՔՄՆԵՐ, ժամանակավոր նյարդ. կապեր, ***ռեֆլեքսներ***, որոնք մշակվում են կենդանիների և մարդու կյանքի ընթացքում՝ որոշակի պայմաններում (այստեղից՝ անվանումը): Ձևավորվում են ***անպայման ռեֆլեքսների*** հիմքի վրա: «Պ. ռ.» եզրույթն առաջարկել է Ի. Պ. *Պավլովը* 1903-ին: Պ. ռ. ձևավորվում են, երբ արտաքին կամ ներքին միջավայրի ցանկացած ազդակի ազդեցությունը համընկնում է որևէ անպայման ռեֆլեքս առաջացնող կամ նրան նախորդող գրգռիչի ազդեցությանը: Պ. ռ. տեղի են ունենում ԿՆՀ-ի բարձրագույն բաժինների մասնակցությամբ:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹ, տարբեր օրգ. վառելանյութերի ջերմ. արժեքները համեմատելու համար ընդունված միավոր: ԱՊՀ-ում որպես Պ. վ. ընդունվել է 1*կգ* քարածխի այրման ջերմարար ունակությունը՝ 29,3 *ՄՋ* (7000 *կկալ*): Միջազգ. էներգետիկ. գործակալությունն ընդունել է 1 *կգ* նավթի համարժեքի (toe) ջերմարարունակությունը՝ 41,868 *ՄՋ* (11,63 *Մվ·ժ*):

ՊԱՅՏԱՍԱՆ, Գեղարդասար, հրաբխ. լ-գագաթ Գեղամա լ-շղթայում: Պ-ի լանջերին պահպանվել են մ. թ. ա. VII–II հզ-ամյակների ժայռապատկերներ (0,5–1 *կմ* խոր-յամբ)՝ որսի հնագույն եղանակների, զենքերի ու այլ միջոցների, կենդանիների ընտելացման ու բուծման պատկերներով: Բազմաթիվ պատկերներ ու պատկերախմբեր կապված են երկն. լուսատուների, բնության երևույթների (կայծակ, ամպրոպ ևն) նախնադար. պաշտամունքի հետ:

ՊԱՅՏԱՔԻԹ ՉՂՋԻԿՆԵՐ (Rhinolophidae), չղջիկների ընտանիք: Մարմնի երկ՝ 3,5–11, պոչինը՝ 2,4–4,3 *սմ*: Դնչին ունի բարդ մաշկ. գոյացություն, այդ թվում՝ պայտանման թիթեղիկ (այստեղից՝ անվանումը): Հայտնի է մոտ 80 տեսակ: ՀՀ-ում հանդիպում են մեծ, Մեհելլիի, Բլազիուսի, հվ. և փոքր Պ. չ.: Օգտակար են. սնվում են միջատներով:

ՊԱՅՈՒՄԱԿԱՎՈՐ ՄՆԿԵՐ (Ascomycetes), **ասկոմիցետներ**, բարձրակարգ սնկերի դաս: Հայտնի է ավելի քան 30 հզ. տեսակ, ՀՀ-ում՝ մոտ 800: Պ. ս-ի հիմն. հատկանիշը բազմացման յուրահատուկ օրգանների՝ պայուսակների առկայությունն է: Հողում մասնակցում են բուս. և կենդ. մնացորդների քայքայմանը, սննդամթերքի, արդ. տարբեր նյութերի, սարքերի վրա առաջացնում են բորբոս: Կան մակաբույծ տեսակներ, որոնք բույսերի, կենդանիների և մարդու վտանգավոր հիվանդությունների հարուցիչներ են: Որոշ տեսակներից ստանում են հակաբիոտիկներ, վիտամիններ, ալկալոիդներ, սպիտակուցներ ևն: Կան նաև ուտելի (մորխ, մորկեղ ևն) տեսակներ:

«ՊԱՅՔԱՐ», գր., հաս-քաղ., տնտ. պարբերաթերթ (1915–19, Թիֆլիս): № 1–100-ը ունեցել են հեղ-ժողովրդավար. ուղղվածություն:

«ՊԱՅՔԱՐ», ազգ., հաս-քաղ., գր., մշակութ. օրաթերթ (1922–95, Բոստոն, 1995–98, Երևան): ՌԱԿ-ի պաշտոնաթերթ: Խմբ-ներ՝ Արմենակ Նազար(եթյան), Երվանդ Մեսիայան, Հրաչ Երվանդ, Անդրանիկ Փոլատյան, Անդրանիկ Անդրեասյան, Նուպար Պերպերյան, Գ. Քեոսեյան, Հարություն Կարապետյան: *«Ազգ»* և *«Պահակ»* պարբ-ների միավորմամբ ստեղծված «Ազգ-Պահակ» (1921–22) օրաթերթի շարունակությունն է:

«ՊԱՅՔԱՐ», «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթի գր. հավելված (1923, Երևան, № 6-ից ինքնուրույն հրտ.՝ գրգեղ. կիսամյա հանդես): Խմբ.՝ Արտաշես Կարինյան:

«ՊԱՅՔԱՐ», քաղ., ընկերային, գր., մշակութ. շաբաթաթերթ (1967–71, 1974, Ստամբուլ): Խմբ-ներ՝ Երվանդ Կոպելյան, Կարպիս Սիւրադյան:

ՊԱՆ, անտառների և արոտավայրերի աստվածը հուն. դից-յան մեջ, հովիվների, հետագայում՝ ողջ բնության հովանավորը: Պատկերվել է այծի եղջյուրներով, սմբակներով և մորուսով մարդու կերպարանքով:

ՊԱՆ... (հուն.՝ pan – ամբողջ, ամեն ինչ), բարդ բառերի մաս. նշանակում է ամենին վերաբերող, ամեն ինչ ընդգրկող (օր.՝ ***պանզոոտիա, պանթեիզմ*** ևն): Համարժեք է հայ. համա... նախածանցին:

ՊԱՆ ԳԻ Սուն (ծ. 1944), ՄԱԿ-ի գլխ. քարտուղար՝ 2007–16-ին: 2004–06-ին՝ Կորեայի Հանրապետության ԱԳ և առևտրի նախարար:

ՊԱՆ ԴԵ ԱՄՈՒԿԱՐ (պորտուգ.՝ Pão de Acúcar), լ. Բրազիլիայում՝ Գուանաբարա ծոցի մուտքի մոտ՝ Ռիո դե Ժանեյրո ք-ի տարածքում: Բարձր.՝ 395 *մ*: Կոնի ձևը նմանվում է «շաքարագլխի»: Պ. դ. Ա.-ին նման հասարակած. հողմահարման ձևերն ստացել են «շաքարագլուխ» անունը:

ՊԱՆԱԻՏԵՍԿՈՒ (Panaitescu) Պետրե (1900–1967), ռումին պատմաբան-միջնադարագետ: Ռումմ. ակադ-ի թղթ. անդամ (1934): Աշխ-ները վերաբերում են Ռումինիայում ավատատիրության տնտ. հարցերին, ռումինա-սլավն. կապերին, ինչպես նաև Ռումինիայի հայկ. գաղութների պատմությանը, երկրի կյանքում հայերի դերին:

ՊԱՆԱՄԱ. (Panamá), **Պանամայի Հանրապետություն** (República de Panamá), պետություն Կենտր. Ամերիկայում՝ Պանամայի պարանոցում: Սահմանակից է Կոստա Ռիկային և Կոլումբիային: Տարածքը՝ 75,4 հզ. *կմ²*, բն.՝ 3,7 մլն (2013): Մայրաքաղաքը՝ ***Պանամա***: Պետ. լեզուն՝ իսպ.: Կառավարման ձևը՝ նախագահահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ Ազգ. ասամբլեան: Բաժանված է 9 վարչ. պրովինցիաների և 3 կոմարկայի (հիմնականում՝ հնդկացիներով բնակեցված հատուկ տարածքներ): Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է: Անդամակցում է ՄԱԿ-ին, Առտ-ին, ԱՀԿ-ին ևն: Տնտ-յան հիմքը Պանամայի ջրանցքից և արտ. նավերին «դրոշ» տրամադրելուց ստացված եկամուտներն են: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 11,9 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է բանան, նավթամթերք, ծովախեցգետին, ձուկ, շաքար ևն, ներմուծում՝ նավթ ու նավթամթերք, մեքենաներ և սարքավորումներ, սննդամթերք, հագուստ ևն: Դրամ. միավորը՝ բալբոա:

Հնում Պ-ի տարածքում բնակվել են հնդկացիները: XVI դ-ում նվաճել են իսպանացի կոնկիստադորները, որոնք ոչնչացրել են արմատ. բնակչության մեծ մասին, Աֆրիկայից բերել են նեգր ստրուկներ՝ տնկադաշտերում աշխատեցնելու նպատակով: 1821-ին ազատվել է գաղութ. լծից և մտել է Մեծ Կոլումբիայի, 1831-ից՝ Նոր Գրանադայի կազմի մեջ: ԱՄՆ մի քանի անգամ ներխուժել է Պ.: 1903-ին Պ. առանձնացել է Կոլումբիայից և հռչակվել է անկախ պետություն, սակայն փաստացի ամբողջ. կախման մեջ է եղել ԱՄՆ-ից: 1903-ին վերջինիս հետ կնքել է պայմանագիր, որով միջօվկիանոս. ջրանցք կառուցելու և շահագործելու համար նրան է զիջել իր տարածքի մի մասը: 1903–21-ին ԱՄՆ-ն 4 անգամ նվաճել է Պ.: 1977-ին ստորագրել են պայմանագիր, որով 1999-ից Պ-ին է վերադարձվել ջրանցքի վերահսկողությունը: 2014-ից երկրի նախագահը Խ. Կ. Վարելան է:

ՊԱՆԱՄԱ, ***Պանամայի*** Հանրապետության մայրաքաղաքը (1903-ից): Բն.՝ 440 հզ., ագլոմերացիայում՝ 1,27 մլն (2010): Նվինգստ՝ համանուն ջրանցքի Խաղաղօվկիանոս. ելքի մոտ: Ունի օդանավակայան, համալսարան, թանգարան ևն: Երկրի տնտ. և մշակութ. կենտրոնն է: Տնտ-յունը կապված է ջրանցքի սպասարկման հետ: Հիմնադրել են իսպանացիները 1519-ին: Կան տաճար և եկեղեցիներ (XVII–XVIII դդ.): Հին Պ-ում (հիմնադրել են ծովահենները 1671-ին) կան շինությունների ավերակներ (XVI–XVII դդ.): ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՊԱՆԱՄԱՅԻ ՆԵՂՈՒՏ, Խաղաղ օվկ-ի Պանամայի ափերի մոտ: Երկ.՝ 140 *կմ*, լայն. ելքի մոտ՝ 185 *կմ*, խոր.՝ 3200 *մ*: Խոշոր ծովախորշերն են Պարիտան և Սան Միգելը: Նեղուցի հս. ափից սկիզբ է առնում ***Պանամայի ջրանցքը***:

ՊԱՆԱՄԱՅԻ ՊԱՐԱՆՈՑ, Կենտր. Ամերիկայի ամենանեղ մասը: Միացնում է Հս. և Հվ. Ամերիկա մայրցամաքները: Առլգն լայն.՝ 48 *կմ*, բարձր.՝ մինչև 180 *մ*:

Պարանոցի առավել ցածրադիր մասում կառուցված է *Պանամայի ջրանցքը*:

ՊԱՆԱՄԱՅԻ ՋՐԱՆՑՔ, հատում է Պանամայի պարանոցի ամենացածր մասը Պանամայի տարածքում և Խաղաղ օվկ–ը (Բալբոա և Պանամա ք–ների մոտ) միացնում Ատլանտ. օվկ–ին (Քրիստոբալ և Կոլոն ք–ների մոտ): 1901–ին անգլո–ամերիկ. պայմանագրով անցել է ԱՄՆ–ին: Առաջին նավը ջրանցքով անցել է 1914–ին: Պաշտոնապես բացվել է 1920–ին: 1999–ից ջրանցքը Պանամայի իրավասության տակ է: Երկ՝ 81,6 *կմ* (65,2 *կմ*–ը՝ ցամաքով, 16,4 *կմ*–ը՝ Կարիբյան ծովի և Պանամայի ջրանցքի խորշերի հատակով), նավանցումներում երաշխավորված խոր.՝ 12,5 *մ*, լայն.՝ 150–305 *մ*: Ջրանցքի վրա կա 12 նավանցում:

ՊԱՆԱՄԱՅԻ ՋՐԱՆՑՔԻ ԳՈՏԻ, Պանամայի տարածքի մի մասը, որով անցնում է *Պանամայի ջրանցքը*: Տարածքը՝ 1432 *կմ*²: Վարչ. կենտրոնը՝ Բալբոա: 1903–79–ին եղել է ԱՄՆ–ի, 1979–99–ին՝ ԱՄՆ–ի և Պանամայի համատեղ ենթակայության տակ: 1999–ին ամբողջովին դադարեցվել է գոտու ԱՄՆ–ի կառավարումը:

ՊԱՆԱՄԱՑԻՆԵՐ, ժողդ, Պանամայի հիմն. բնակչությունը (2 մլն, 2010): Մոտ 80 %–ը մետիսներ և մուլատներ են: Լեզուն՝ իսպ.: Հավատացյալները հիմնականում կաթոլիկ են:

ՊԱՆԱՄԵՐԻԿԱՆԻԶՄ, **համաամերիկանություն**, XIX դ–ում առաջացած քաղ. ուսմունք, համաձայն որի՝ Ամերիկա մայրցամաքի երկրներն ունեն պատմ. ճակատագրի, տնտ–յան ու մշակույթի ընդհանրություն: Ուսմունքի իրագործման համար մեծ դեր է խաղում ԱՄՆ–ն:

ՊԱՆԱՄԵՐԻԿԱՆ ԽՃՈՒՂԻ, Լատ. Ամերիկայի խոշորագույն ավտոմայրուղային համակարգ, որը նրան միացնում է ԱՄՆ–ի հետ: Երկ.՝ 33,6 հզ. *կմ*: Սկսվում է Նուևո Լարեդո ք–ի մոտից՝ ԱՄՆ–ի և Մեքսիկայի սահմանում, անցնում է Կենտր. և Հվ. Ամերիկայի պետությունների մայրաքաղաքներով և խոշոր ք–ներով:

ՊԱՆԱՄԵՐԻԿՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐ, միջամերիկյան խորհրդաժողովներ, Ամերիկա մայրցամաքի հանրապետությունների՝ պարբերաբար գումարվող խորհրդաժողովներ: Հրավիրվում են 1889–ից: Պ. խ–ով հիմնադրվել են ***Ամերիկյան պետությունների կազմակերպությունը***, *Պանամերիկյան միությունը* և այլ կազմ–յուններ:

ՊԱՆԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, ստեղծվել է 1889–ին 1–ին պանամերիկ. խորհրդաժողովում՝ որպես Ամերիկ. հանրապետությունների միջազգ. միություն (1910–ից՝ Պ. մ.)՝ տնտ. տեղեկատվության փոխանակման համար: 1948–ին ***Ամերիկյան պետությունների կազմակերպության*** ստեղծումից հետո նրա կենտր. մշտ. մարմինն է: 1970–ին Պ. մ. վերանվանվել է Գլխ. քարտուղարության: Նստավայրը Վաշինգտոնում է:

ՊԱՆԱՅ, կղզի Ֆիլիպին. կղզեխմբում: Տարածքը՝ 11,5 հզ. *կմ*², բարձր.՝ մինչև 2117 *մ*: Ծածկված է սավաննաներով, արևադարձ. անտառներով: Հիմն. ք–ներն են Իլիոլոն և Պոխաս:

ՊԱՆԱՋԻ, ք–նվ՝նզստ Հնդկաստանի արմ–ում՝ Արաբ. ծովի ափին, Գոա՝նինգ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 115 հզ. (2011): Զբոսաշրջային կենտրոն է:

ՊԱՆԱՐԻՆ Եվգենի Ֆեոդորովիչ (ծ. 1938), ռուս. քիմիկոս: ՌԴԱ թղթ. անդամ (1990–ից): Աշխ–ները վերաբերում են ջրալույծ պոլիմերների սինթեզին, այդ թվում՝ բժշկության մեջ կիրառվող: Ստեղծել է պոլիմեր–կրիչներ՝ դրանց վրա կենսաբանորեն ակտիվ նյութեր սևեռելու համար:

«ՊԱՆԱՄԵՆԻԱՆ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ», ՀՀ ամենախոշոր մեդիամիավորումը: Հիմնադրվել է 2012–ին Երևանում՝ «Արմենիա», «ԱրմՆյուզ», «ATV» հեռուստաընկ–ների, «Ռադիո Ձան», «Լավ Ռադիո» ռադիոկայանների, «ԹիՎիՄոլ» շաբաթաթերթի, «Թերթ. Էյեմ», «Բլոգնյուզ. էյեմ» էլեկտրոն. պարբ–ների, «Պանարմենիան–մեդիա» գովազդ. գործակալության միավորմամբ: Ունի նաև իր պաշտոն.՝ «Պան Արմենիան–ԹիՎի» հեռուստաընկ–ն ԱՄՆ–ում:

ՊԱՆԱՑԵԱ, **համադարման**, դեղամիջոց, ըստ ալքիմիկոսների՝ բուժում է բոլոր հիվանդությունները (հուն. Պանակիե աստծու անունից):

ՊԱՆԳԵՆԵԶԻՄ, Չ. *Դարվինի* առաջարկած ժառանգականության վարկածը, համաձայն որի՝ ծնողների հատկանիշներն ու հատկությունները սերունդներին են փոխանցվում մանրագույն սաղմերի՝ հեմուլների միջոցով, որոնք սեռ. բջիջներ են թափանցում օրգանիզմի բոլոր այլ բջիջներից:

ՊԱՆԴԱՆԵՆԵՐ (Ailuridae), կաթնասունների 2 տեսակ: Փոքր Պ. ենոտների ընտանիքից են, մարմնի երկ.՝ 51–64, պոչինը՝ 28–48 *սմ*: Ապրում են Չինաստանի հվ–արմ. լեռներ.ում, Հս. Մյանմայում և Նեպալում: Մեծ Պ. հաճախ կոչվում է ինդկեղեգի արջ, արջերի ընտանիքից է:

ՊԱՆԴԵՄԻԱ, (հուն.՝ pandemia – ողջ ժողովուրդը), տես *Համավարակ*:

ՊԱՆԴԵՐ Քրիստիան Իվանովիչ (Քրիստիան Հենրիխ, 1794–1865), գերմանացի կենսաբան–էվոլյուցիոնիստ: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1823): Չ. *Դարվինը* նրան համարել է իր նախորդը: Առաջիններից է ապացուցել (1817) սաղմն. 3 թերթիկների կարևորությունը բազմաբջիջ կենդանիների և մարդկանց որոշակի հյուսվածքների խմբերի և օրգանների ձևավորման մեջ:

ՊԱՆԴԽՏՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ, **պանդուխտի երգեր**, հայկ. միջնադար. երգի տեսակ, ***անտունիների*** ու ***հայրենների*** ինքնուրույն բաժին: Եղանակները հանդարտ են, պատմող. (Կոմիտասի գրառած պանդուխտի անտունիները) կամ անմիջական, հուզ. ևն, ձևակառուցվածքը՝ ազատ, անհատականացված ելևէջներով («Կռունկ»):

ՊԱՆԴԽՏՈՒԹՅՈՒՆ, **աստանդություն, տարագնացություն**, ժամանակավոր արտագնացություն՝ տնտ. և քաղ. ծանր կացության պատճառով: Հայ իրականության մեջ տարածվել է օտար նվաճողների, հատկապես՝ Օսմ. կայսրության տիրապետության ժամանակներում: Զգալի չափերի է հասել նաև 1990–ական թթ–ի սկզբներին՝ ՀՀ անկախացումից հետո:

ՊԱՆԴՈՐԱ, (հուն.՝ Pandora – բառացի՝ համաշնորհ), Զևսի կամքով Հեփեստոսի ստեղծած առաջին կինը հուն. դիցյան մեջ. արարվել է որպես մարդկանց պատիժ՝ Պրոմեթևսի գողացած կրակի համար: Պ. իր գեղեցկությամբ գերել է Պրոմեթևսի եղբայր Էմեթեոսին և դարձել նրա կինը: Ամուսնու տանը բացել է Հերմեսի թողած դժբախտություններով լեցուն տուփը, և մարդկային դժբախտությունները տարածվել են աշխարհով մեկ: Փխբ. իմաստով՝ «Պանդորայի տուփ»՝ դժբախտությունների աղբյուր:

ՊԱՆԴՈՐԱ, Սատուռնի արբանյակ: Հեռ. մոլորակից՝ 81,5 հզ. *կմ*, նրա շուրջ պտտման պարբերությունը՝ 15 *ժ* 5 *ր*: Հայտնաբերվել է 1980–ին «*Պրոմեթևս*» արհեստ. արբանյակով:

ՊԱՆԴՈՒՍ (ֆրանս.՝ pente douse – թեք հարթակ), 1. թեք հարթակ շենքի բարձրադիր մուտքերից մտնելու, ավտոտնակներից մեքենաներ բարձրացնելու համար: Առանձին դեպքերում (օր.՝ գետնանցումներում) փոխարինում է սանդուղքին: 2. (Թատրոն) դեկորացիաների (բեմ.) ձևավորման հարմարանք, որով փոփոխվում է բեմի մակարդակը:

ՊԱՆԵԹ (Paneth) Ֆրիդրիխ Ադոլֆ (1887–1958), գերմանացի քիմիկոս: Առաջինն է ուսումնասիրել երկնաքարերի բացարձակ տարիքը, մշակել է նրանց մեջ հելիումի պարունակության որոշման ճշգրիտ եղանակը: Ֆայանսի–Պանեթի (1913) կանոնի հեղինակներից է: Գ. *Հևեշի* հետ առաջարկել է (1913) իզոտոպ. ինդիկատորների եղանակը:

ՊԱՆԵԼ, (գերմ.՝ Paneel), 1. (շին.) գործարանում պատրաստվող խոշորաչափ շին. կառուցատարր: 2. Պատերի ևնի դեկորատիվ պատվածք (փայտ, պլաստիկ, յուղաներկ ևն): 3. Պ–ային ջեռուցման տաքացնող տարրը: 4. Էլ. վահանակի, կառավարման վահանակի, ռադիոտեխ. սարքերի այն մասը, որի վրա տեղադրված են ազդանշան., հսկիչ–չափիչ և այլ սարքեր:

ՊԱՆԵՆԹԵԻԶՄ (< հուն. pan – բոլոր և theos – աստված), կրոնափիլ. ուսմունք, ըստ որի՝ աշխարհն Աստծու մեջ է: Հասկացությունը ներմուծել է Կ. *Կրառզեն* (1828):

ՊԱՆԶՈՈՏԻՄ, (< *պան*... և հուն.՝ zoón – կենդանի), *համաճարակ*, կենդանիների վարակիչ հիվանդությունների լայն տարածումը 1 երկրում կամ մի քանի երկրներում, մայրցամաքում: Համաճարակի զարգացման բարձր աստիճանն է:

ՊԱՆԹԵԻԶՄ, տես *Բնապաշտություն*:

ՊԱՆԹԵՈՆ (լատ.՝ Pantheon – համադիցարան, տաճար), 1. որևէ ժողդ–ի կամ կրոնի աստվածներին ավիրված տաճար, վայր: Այդպիսիք էին օլիմպիականը՝ Հին Հունաստանում, Հռոմի Պ.՝ Հռոմ. կայսրությունում, Մուսասիրի տաճարը՝ Վանի (Ուրարտու) թագավորությունում: 2. Նշանավոր մարդկանց աճյունների ամփոփարան կամ գերեզմանոց–հանգստարան: Օր.՝ Փարիզի Սբ Ժեննևի տաճարը դարձել է Պ., մ. թ. ա. IV–III դդ–ում Կոմմագենեի Երվանդունիների արքայատան Պ. եղել է Նեմրութ լ–ան վրա, համանման Պ. են ունեցել հայ իշխան. տոհմերը, հոգևոր խոշոր գործիչները և ուր.: Հայ նշանավոր գործիչների Պ. է Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատունը, Երևանի Կոմիտասի անվ. զբոսայգու Պ.: Յուրօրինակ Պ. է նաև Եռաբլուրի գերեզմանատունը:

ՊԱՆԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, **համաթյուրքականություն**, ազգայնամոլ. գաղափարախոսություն, որի հիմքում թյուրքալեզու ժողդ–ների մեկ ազգ լինելու և թուրքերի գլխավորությամբ նրանց մեկ պետության մեջ միավորելու գաղափարն է: Սկզբնավորվել է XIX դ–ի վերջին, դարձել է *երիտթուրքերի* քաղ–յան հիմն. գաղ. զենքը: Հայտնի տեսաբաններից են Զ. Գյոքալփը, Յ. Աքչուրան, Ա. Աղաևը, Ֆ. Քյոփրյուլուն:

ՊԱՆԻՆԻ, մ. թ. ա. V–IV դդ.-ի հնդիկ լեզվաբան: Հեղինակ է սանսկրիտի առաջին նորմատիվ քերակ-յան («Ութնամատյան»), որտեղ ներկայացրել է վեդաների լեզվի (սանսկրիտի համեմատությամբ) և սանսկրիտի (մասնակիորեն) հնչյունաբանությունը, ձևաբանությունը, բառակազմությունը և շարահյուսությունը:

ՊԱՆԻՍԼԱՄԻԶՄ, **համաիսլամականություն**, կրոնաքաղ. գաղափարախոսություն. սկզբնավորվել է XIX դ.-ի 2-րդ կեսին և տարածվել մահմեդ. երկրներում (առավելապես՝ Իրանում, Օսմ. կայսրությունում)՝ իսլամ դավանող ժողդ-ների քաղ. միավորում ստեղծելու նպատակով: Պ.-ի հիմնադրույթը [ձևակերպել են Ջեմալ ադ Դին Աֆղանին (1839–1897), Մուհամմադ Աբդոն (1849–1905) և ուր.] բխում է դաս. իսլամի սկզբունքներից:

ՊԱՆԻՐ, սննդամթերք, ստանում են կաթի մակարդման և մակարդուկի հետագա վերամշակման միջոցով: Պարունակում է սպիտակուցներ (15–27 %), ճարպեր (20–32 %), հանք. նյութեր (մինչ 55 %), A և B վիտամիններ: Կալորիականությունը՝ 1470–1680 *կՋ* (350–400 *կկալ*): Հայտնի է մոտ 700 տեսակի Պ.: Լինում է պինդ, փափուկ, աղաջր. և հալած, ըստ կաթի մակարդման եղանակի՝ շրդանային և կաթնաթթվային: ՀՀ-ում արտադրում են 31 տեսակի Պ-ներ («Լոռի», «Հայկական», «Եղեգնաձոր», «Աշոցքի», «Գորիսի», չանախ ևն): Պանրագործությունը Հայաստանում զարգացած է վաղ անցյալից:

ՊԱՆԼՈԳԻԶՄ (< հուն. pan – ամեն ինչ և *լոգոս*), փիլ. հայեցակետ, ըստ որի՝ ամեն ինչի հիմքում բանականությունն (լոգոս) է և աշխարհում նրա իրականացումը: Պ.-ի ականառու ներկայացուցիչներից է Գ. *Հեգելը*:

ՊԱՆԿՐԵՈԶԻՄԻՆ, **խոլեցիստոկինին**, կենդանիների և մարդու հորմոն, որն արտադրվում է 12-մատնյա աղիի լորձաթաղանթում: Խթանում է ենթաստամոքս. գեղձի մարսող. ֆերմենտների սինթեզը:

ՊԱՆՄԻՔՍԻԱ (< *պան...* և հուն.՝ mixis – խառնում), **համախառնում**, առանձնյակների ազատ տրամախաչումը պոպուլյացիաների կամ կենդանիների ներտեսակային այլ խմբերի սահմաններում:

ՊԱՆՅՈԼ (Pagnol) Մարսել (1895–1974), ֆրանսիացի գրող, կինոռեժ.: Հեղինակ է «Մարիուս» (1929), «Տոպազ» (1931) սատիր. պիեսների, «Հորս փառքը» (1957), «Մորս դղյակը» (1957), «Գաղտնիքների ժամանակը» (1960), «Միրո ժամանակը» (հրտ.՝ 1977) ինքնակենսագր. քառերգության: Նկարահանել է նեոռեալիզմի ոգով ֆիլմեր:

ՊԱՆՆՈ (ֆրանս.՝ panneau), 1. պատի, առաստաղի շրջանակված հատված՝ հարդարված պատկերով կամ նախշով: 2. Մոնումենտալ-դեկորատիվ ստեղծագործություն՝ նախատեսված ճարտ. հարդարանքի համար:

ՊԱՆՈ, հնդկացի ժողդ-ների (չամա, գուայ, կուրու, կաշինաուա ևն) խումբ: Ապրում են Ամազոնի ավազանի վերին շրջաններում, Արլ. Պերուում (40 հզ-ից ավելի, 2010), Արմ. Բրազիլիայում (մինչև 2 հզ.) և Բոլիվիայում (1 հզ.): Լեզուն՝ պանո-տականյան լեզուների պանոանյան ճյուղ: Հավատացյալները հիմնականում ավանդ. հավատալիքների հետևորդներ են:

ՊԱՆՈՎԱ Վերա Ֆեոդորովնա (1905–1973), ռուս գրող: Հեղինակ է «Արբանյակներ» (1946), «Ուղեկիցներ» (1946, հայ.՝ 1948, կինոնկար՝ «Գթության գնացք», 1964), «Պայծառ ափ» (1949, հայ.՝ 1951), «Սերյոժա» (1955, հայ.՝ 1957), «Վաղ առավոտյան» (1964) և այլ վիպակների, «Կրուժիլիխա» (1947, հայ.՝ 1950), «Տարվա եղանակները» (1953), «Սենտիմենտալ վեպ» (1958) վեպերի, նաև պատմվածքների, պիեսների, սցենարների:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1947, 1948, 1950):

ՊԱՆՈ–ՏԱԿԱՆՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, հնամերիկ. հնդկացիական լեզուների (թվով՝ 30) ընտանիք: Տարածված են Պերուում, Բրազիլիայի և Բոլիվիայի արմ-ում, Պարագվայի հս-ում: Ունեն 2 ճյուղ:

ՊԱՆՈՐԱՄԱՅԻՆ ԿԻՆՈ, կինեմատոգրաֆի տեսակ, որտեղ ֆիլմը սովորաբար նկարահանվում է միաժամանակ 3 կինոժապավենի վրա, ընդ որում՝ յուրաքանչյուրի վրա ստացվում է օբյեկտի պատկերի 1/3 մասը: Պրոյեկտում են 3 կինոպրոյեկտորով՝ մեծ չափերի խիստ կոր էկրանի համապատասխան հատվածների վրա (մի քանի հարյուր *մ*²):

«ՊԱՆՉԱՏԱՏՐԱԿ» (սանսկրիտ – հնգամատյան), սանսկրիտով պատմող. գրկյան հուշարձան (մոտ III–IV դդ.): Ընդգրկում է բարոյախրատ. առակներ, հեքիաթներ, նովելներ, որտեղ արտացոլված են Հնդկաստանի կյանքը, սոցիալ. հարաբերությունների երգիծ. պատկերը: «Պ.» թարգմանվել է 200-ից ավելի լեզուներով, առավել հայտնի է արաբ. տարբերակը (VIII դ.-ի կես, «Քալիլա և Դիմնա» վերնագրով), որն էլ հիները. թարգմ-յան (XIII–XVI դդ.) միջոցով անցել է Եվրոպա:

ՊԱՆՍԻՈՆ (ֆրանս.՝ pension, < լատ. pensio – վճարում, վարձակալության կամ բնակարանային վճար), 1. մասնավոր, հազվադեպ՝ պետ. փակ ուս. հաստատություն՝ հանրակացարանով և սովորողների խնամակալությամբ: 2. Կենվորների լրիվ խնամակալությամբ ոչ մեծ հյուրանոց:

ՊԱՆՈՍ (Panso) Վոլդեմար (1920–1977), էստոնացի ռեժ., դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1977): 1941-ից՝ Տալլինի (ընդհատումներով) Վ. Կինգիսեպպի անվ. էստ. թատրոնի ռեժ. (1970-ից՝ գլխ. ռեժ.): Բեմադրել է Բ. Բրեխտի «Պարոն Պունտիլան և նրա ծառա Մատտին» (1958), «Մարդ և Աստված» (1962), «Մարդ և հեղափոխություն» (1970), «Մարդ և մարդ» (1972, ևերգություն, ըստ Ա. Տամմսարեի), Գ. Իբսենի «Շինարար Սոլնեսը» (1974), Վ. Շեքսպիրի «Ռիչարդ III» (1975) և այլ գործեր:

ՊԱՆՍՊԵՐՄԻԱ (< *պան...* և հուն.՝ sperma – սերմ), վարկած՝ տիեզերքում կենդանի էակների սաղմերի համատարածվածության վերաբերյալ: Տարբեր ձևակերպումներով գոյություն է ունեցել վաղ անցյալից մինչև XX դ.-ի սկիզբը: Տիեզ. ճառագայթների հայտնաբերումից և կենսբ. օբյեկտների վրա ճառագայթման կործանարար ազդեցության բացահայտումից հետո Պ.-ի վարկածը կորցրել է իր կարևորությունը:

ՊԱՆՏԵԼԵԵՎ Լ. (Երեմեև Ալեքսեյ Իվանովիչ, 1908–1987), ռուս գրող: Հեղինակ է անապատան երեխաների կյանքի մասին «Շկիդ հանրապետություն» (համահեղ., 1927, կինոնկար՝ 1966), «Ժամացույցներ» (1928) վիպակների, մանկ. պատմվածքների, «Յոնկա Պանտելեև» (1939, նոր տարբերակ՝ 1952) ինքնակենսագր. վեպի, «Մեր Մաշան: Գիրք ծնողների համար» (1966) երկի: Հայ. հրատարակվել են «Ծրար» (1934) վիպակը, «Ազնիվ խոսք» (1946), «Պատմվածքներ» (1957) պատմվածքների ժող-ները:

ՊԱՆՏԵԼԵՐԻԱ (Pantelleria), կղզի Միջերկր. ծովի կենտրոնում՝ Սիցիլիայից հվ-արմ.՝ Իտալիայի կազմում: Տարածքը՝ 83 *կմ*²: Վերջրյա հատվածում կա հանգած հրաբուխ: Բարձր.՝ 836 *մ*: Նվինգստ-ը՝ Պանտելերիա ք-ը:

ՊԱՆՏԵՐ, ազնիվ և բծավոր եղջերուների՝ բրդով ու մորթով ծածկված չոսկրացած եղջյուրները: Օգտագործում են խթանող դեղանյութ (*պանտոկրին*) ստանալու համար: Պ.-ի համար եղջերուներին բազմացնում են հատուկ տնտ-յուններում:

ՊԱՆՏԻԿԱՊԵՈՆ (Panticapeon), անտիկ քաղաք (մ. թ. ա. VI–մ. թ. IV դդ.) *Կերչ* ք-ի տարածքում: VI դ.-ի վերջերին հուն. խոշորագույն ք-պետությունը Սև ծովի ափին. տարածաշրջանում առաջինն է դրամ հատել (արծաթ, ոսկի, պղինձ՝ մինչև մոտ մ. թ. ա. 342-ը): V դ.-ից՝ *Բոսպորի թագավորության* մայրաքաղաքը. առևտր., արհեստավոր. և մշակութ. գլխ. կենտրոն էր: Վաղ միջնադարում կոչվել է Բոսպոր: Ուշագրավ են դամբարանաբլուրներից հայտնաբերված քարե դագաղները (մ. թ. ա. IV–III դդ.) և մ. թ. առաջին դարերի որմնանկար-դամբարանները:

ՊԱՆՏՈԿՐԻՆ (Pantocrinum), նյարդ. համակարգը խթանող դեղանյութ: Ստացվում է մարալների, զուբրերի և բծավոր եղջերուների *պանտներից*: Օգտագործվում է որպես տոնուսը բարձրացնող միջոց՝ գերհոգնածության, նյարդերի և սրտամկանի թուլության, արյան ցածր ճնշման դեպքերում:

ՊԱՆՏՈՏԵՆԱԹԹՈՒ, B_3 **վիտամին**, ջրալույծ վիտամին: Ըստ քիմ. բնույթի՝ երկպեպտիդ է: Մտնում է նյութափոխանակության շատ ռեակցիաներին մասնակցող A կոֆերմենտի բաղադրության մեջ: Պարունակվում է խմորիչներում, լյարդում, ձվի դեղնուցում, բույսերի կանաչ մասերում, կաթի, գազարի մեջ ևն: Անբավարարությունը հանգեցնում է նյութափոխանակության խանգարումների (մաշկաբորբեր, պիգմենտազերծում, աճման դադարեցում ևն): Որպես դեղամիջոց՝ կիրառում են կալցիումի պանտոտենատը:

ՊԱՆՔՐՈՄԱՏԻԿ ՆՅՈՒԹԵՐ, լուսանկարչ. թիթեղներ և ժապավեններ, որոնք զգայուն են ոչ միայն ԱՄ-ի, մանուշակագույնի և կապույտի, այլև կանաչի, դեղինի և կարմիրի նկատմամբ: Արծաթի հալոգենիդի հետ էմուլսային շերտում պարունակում են հատուկ օպտիկ. զգայունարարներ: Համապիտանի նյութեր են, կիրառվում են մասնագիտ. և սիրող. լուսանկարչության մեջ՝ նկարների բազմացման, օդալուսանկարահանման ժամանակ:

ՊԱՆՕՖԹԱԼՄԻՏ (< *պան...* և հուն.՝ ophthalmos – աչք), ակնախնձորի թաղանթների սուրթարախ. բորբոքում: Պատճառները՝ աչքի վարակված վերքերը, հազվադեպ՝ աչքի մեջ արյան հոսքով վարակի թափանցումը (մետաստատիկ օֆթալմիա), ԱՄՀ-ով աչքի ինտենսիվ ճառագայթումը (էլեկտրաօֆթալմիա):

ՊԱՆՖԻԼՈՎ Գլեր Անատոլիևիչ (ծ. 1934), ռուս. կինոռեժ.: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1984): Նկարահանել է «Սկիզբ» (1970), «Ձայն եմ խնդրում» (1976), «Թեմա» (1979, ցուցադրվել է 1987-ին), «Վասսա» (1983),

«Մայրը» (1990), «Անմեղ մեղավորները» (2008, գլխ. դերերում Պ–ի կինը՝ Ի. Մ. *Չուրիկովան*) և այլ ֆիլմեր, բեմադրել Վ. Շեքսպիրի «Համլետ» (1986), Ա. Մ. Գալինի «Sorry» (1992) պիեսները: ՌԽՖՍՀ (1985), ՌԴ (2001) Պետ. մրց-ներ:

ՊԱՆՖԻԼՈՎ, Իվան Վասիլևիչ (1892/93–1941), խորհրդ. զորապետ, գեն–մայոր (1940): ԽՄ հերոս (1942, հետմահու): ՀՄՊ–ի ժամանակ՝ 316–րդ հրաձգ. դիվիզիայի հրամ.: Զոհվել է մարտում:

ՊԱՆՖԻՈՐՈՎ, Ֆեոդոր Իվանովիչ (1896–1960), ռուս գրող: 1931–60–ին՝ «Օկտյաբր» ամսագրի գլխ. խմբ.: Հեղինակ է «Չորսուներ» (գիրք 1–4, 1928–37) վեպի, «Մայր Վոլգա գետը» (1953–60) եռերգության, «Հարազատ անցյալ» (1956) ինքնակենսագր. վիպակի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1948, 1949):

ՊԱՇԱՏ, Բաշեթադաղ, լ–գազաթ Հայկ. լ–աշխարհում՝ Կորդվաց լ–ների հս–ում՝ Վանա լճից հվ: Բարձր.՝ 3250 *մ*:

ՊԱՇԱՐՈՒՄ, 1. ռազմ. գործողությունների տեսակ՝ բերդ, ամրոց կամ քաղաք գրավելիս: 2. Մեքենայի, սարքի կամ սարքավորումների աշխատակարգի փոփոխություն (ընդհուպ մինչև կանգառում)՝ բնականոն շահագործման պայմանների կտրուկ փոփոխության դեպքում:

ՊԱՇԵՆ (Paschen) Ֆրիդրիխ (1865–1947), գերմանացի ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ արտ. պատվ. անդամ (1930): Հայտնաբերել է հետագայում իր անունով կոչված Պ–ի օրենքը (1889), բացահայտել ԵԿ տիրույթում ջրածնի սպեկտր. սերիա (Պ–ի սերիա, 1908), հայտնագործել Պաշեն–Բակի էֆեկտը (1912):

ՊԱՇԵՆԻ ՕՐԵՆՔ, 2 հարթ էլեկտրոդների միջև գազ. լիցքաթափման նվազագույն լարվածությունը հաստատուն մեծություն է տվյալ գազի համար՝ pd (որտեղ p–ն ճնշումն է, d–ն՝ հեռ–յունը էլեկտրոնների միջև) արտադրյալի նույնական արժեքների դեպքում: Գազ. լիցքաթափման նմանության օրենքի մասնավոր դեպք է:

ՊԱՇԵՆՆԱՅԱ Վերա Նիկոլաևնա (1887–1962), ռուս. դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1937): 1907–ից՝ Մոսկվայի Փոքր թատրոնի դերասանուհի (Լյուբով Յարովայա՝ Կ. Ա. Տրենյովի «Լյուբով Յարովայա», Վասսա՝ Մ. Գորկու «Վասսա Ժելեզնովա», ևն): ԽՍՀՄ Պետ. (1943), Լենինյան (1961) մրց-ներ:

ՊԱՇԿԵՎԻՉ Վասիլի Ալեքսեևիչ (մոտ 1742–1797), ռուս. կոմպոզիտոր, ջութակահար, դիրիժոր: Ռուս. կոմիկ. օպերայի («Պատահար կառքով», 1779, «Ժլատը», մոտ 1782, ևն) հիմնադիրներից:

ՊԱՇՏԱՄՈՒՆՔ, կուլտ (լատ.՝ cultus – բառացի՝ երկրպագություն, խոնարհում), 1. կրոնի ծիս. կողմը, գործողություններ, որոնց նպատակը կրոն. երկրպագությունը տեսանելի դարձնելն է կամ էլ աստված. ուժին հաղորդակցվելը: 2. Որևէ մեկի (անձի Պ.) կամ երևույթի չափազանց մեծարելը: Բնորոշ է միապետ. պետությունների առաջնորդներին (օր.՝ Ստալինի պաշտամունքը, որը հայտնի է «Անհատի պաշտամունք» անունով):

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԼԵԶՈՒ, լեզու, որին տրված է հատուկ կարգավիճակ որևէ պետության մեջ, պետության առանձին տարածաշրջանում, երկրում կամ միջազգ. կազմ–յան մեջ (օր.՝ բենգալ–ը՝ Բանգլադեշում, անգլ–ը, ռուս–ը, ֆրանս–ը, իսպ–ը, արաբ–ը՝ ՄԱԿ–ում, հայ.՝ ՀՀ–ում, ևն): Պետության համար Պ. լ. կոչվում է նաև *պետական լեզու*, որով մշակված են տվյալ երկրի սահմանադրությունն ու օրենսդրությունը:

ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԴԻՐՔԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ, պաշտոնեական **լիազորությունների չարաշահում** (քր. իրավունք), պաշտոն. դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայող. պարտականությունները չկատարելը՝ շահադիտ., անձն. այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմ–յունների իրավունքներին, հաս–յան կամ պետության օրինական շահերին:

«ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ», ազգ–ազատագր. գաղտնի կազմ–յուն: Հիմնադրվել է Կարինում (Էրզրում) 1881–ի մայիսին՝ Խաչատուր *Կերկեջյանի* նախաձեռնությամբ: Նպատակը Հայաստանի անկախության վերականգնումն էր: 1882–ի նոյեմբ–ին հայտնաբերվել է, 1883–ին տեղի է ունեցել անդամների դատը՝ արևմտահայերի 1–ին քաղ. դատավարությունն Օսմ. կայսրությունում:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀՀ ՊՆ, ստեղծվել է 2015–ին Երևանում՝ Դ. Կանայանի անվ. ազգ. ռազմավար. հետազոտությունների ինստ–ի (հիմն.՝ 2005) հիման վրա: ՀՀ–ում միակ պետ. կենտրոնն է, որը պաշտպ. անվտանգության ոլորտում կատարում է ռազմավար. վերլուծություններ, որոնց եզրակացություններն ու առաջարկությունները լույս է ընծայում *«Հայկական բանակ»* հանդեսի «Աշխատանքային տետրեր. հավելվածում» (2007–ից): 2014–ից հրատարակում է «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ» (հ. 1–4….) մատենաշարը: Համալսարանի պետ՝ գեն–լեյտ. Հայկ *Քոթանջյան*:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐ, գղտ. հանդակները, բնակավայրերը, ջրամբարները, ճանապարհները բնական և մարդահարույց անբարենպաստ գործոններից պաշտպանելու, ինչպես նաև տեղանքի կլիմ. և ջրաերկրբ. պայմանները բարելավելու նպատակով հիմնված արհեստ. անտառներ և անտառաշերտեր:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, 1. ջրատեխ. կառույցներ, որոնք՝ նվինգստ–ի ջրատարածքը պաշտպանում են ալիքներից, հոսանքներից, ջրաբերուկներից և սառույցից: Տեղադիրքից կախված՝ լինում են ալեբեկիչներ, ծովապատնեշներ և լիրքային ջրաթմբեր: 2. Շինություններ, որոնք կառուցվում են տեղանքում զորքի պաշտպ–յան պայմանները ապահովելու, կորուստը նվազեցնելու և պաշարման ժամանակ թշնամու հարձակումը դժվարացնելու համար:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆ, զինվորներին մարտում պաշտպանելու միջոցներ՝ սաղավարտ, լանջապանակ, զրահ, կրծքի զրահ, վահան ևն: Անցյալում ձիու մարմինը, օր., պաշտպանվել է մետաղե թիթեղներով մակակարված հոծ գործվածքով: Ծանր Պ. ս. օգտագործվել է XV–XVII դդ–ում, XIX դ–ից կիրառվել են թեթև Պ. ս.՝ սաղավարտ, թիկնապանակ ևն: Ժամանակակից բանակներում օգտագործվում են պողպատե, նայլոնե և այլ նյութերից պատրաստված կրծքակալ–բաճկոններ:

ՊԱՇՏՊԱՆԱՄԱՐՋԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՊՆ, պաշտպանահայրենասիր. կամավոր կազմ–յուն, հիմնադրվել է 1951–ին, մինչև 1991–ը՝ ԴՕՍԱԱՖ (ռուս.՝ Добровольное общество содействия армии, авиации и флоту): Զբաղվում է նախազորակոչ. ու զորակոչ. տարիքի երիտասարդության ռազմահայրենասիր. դաստիարակությամբ, հայրենասիր. ոգու բարձրացման և ՀՀ ԶՈՒ–ի համար կադրերի պատրաստման ու տեխ. ձևերի զարգացման հարցերով: Ունի մարզ. բաժանմունքներ: Ընկ–յան նախագահ՝ գեն–մայոր Արկադի *Տեր–Թադևոսյան* (2001–ից):

ՊԱՇՏՊԱՆԱՐԵՐՍ, **պրոտեկտոր** (լատ.՝ protector – պաշտպանիչ), ռետինե հաստ շերտ օդաճնշ. դողերի արտաքին մասում՝ դրանք ծակվելուց և մնասումներից պաշտպանելու, ճանապարհի մակերևույթի հետ շփումը մեծացնելու համար:

ՊԱՇՏՊԱՆԻՉ ԿՈՆՏԵՅՆԵՐ (միջուկ. էներգետիկայում), միջուկ. վառելանյութի (ճառագայթաակտիվ նյութերի)՝ շրջակա միջավայրի հետ շփումը կանխելու համար նախատեսված կապարե արկղ: Կիրառում են ռեակտորի ակտիվ մասը լցվող վառելանյութի պահպանման կամ տեղափոխման, իսկ փոխադրելի–փաթեթավորման Պ. կ.՝ օգտագործված միջուկ. վառելանյութի համար:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ, 1. ՀՀ Կառ–յանն առընթեր ռազմ. ղեկ. մարմին՝ 1991–ի ապրիլի 5 – 1992–ի փետր. 16: Կազմավորվել է ԼՂՀ–ում և ՀՀ սահմանամերձ շրջաններում պայթյունավտանգ իրավիճակի, «Օղակ» գործողության ծավալման պայմաններում (նախագահ՝ Վահան Շիրխանյան, շտաբի պետ՝ Գուրգեն *Դալիբալթայան*): 2. **Պետական**, ԼՂՀ իշխանության արտակարգ բարձրագույն մարմին, որին Արցախյան գոյամարտի տարիներին վերապահվել են գործադիր իշխանության, ինչպես նաև ռազմ. դրության իրականացման լիազորություններ: Կազմակերպվել է 1992–ի օգոստ. 15–ին՝ Ռոբերտ *Քոչարյանի* նախագահությամբ:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ԽՍՀՄ–ում, պետ. արտակարգ բարձրագույն մարմին՝ Ի. Վ. *Ստալինի* նախագահությամբ (1941–ի հունիսի 30–1945–ի սեպտ. 4), որը ՀՄՊ–ի տարիներին տնօրինել է ողջ իշխանությունը:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, 1. թշնամու հարձակումից պաշտպանվելու միջոցառումների ամբողջությունը: 2. (Իրավունք) մեղադրանքի (լիակատար կամ մասնակի) հերքման, մեղադրյալի անմեղության կամ նվազ մեղավորության ապացուցմանը ծառայող դատավար. գործողությունների համալիր:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՋԵՆՔԻՑ, կազմակերպ., ճարտարագիտ., բժշկ. և այլ միջոցառումների համալիր՝ ուղղված միջուկ., քիմ. ու կենսբ. զենքերի ավերիչ գործողությունների ազդեցության և ավերածությունների կանխարգելմանն ու առլգն նվազեցմանը՝ զորքերի անձնակազմի և բնակչության կյանքի, առողջության, մարտունակության պահպանման, ինչպես նաև ռազմ., քաղաք. և բնական օբյեկտների, կենդանիների ու նյութ. արժեքների պահպանության նպատակով:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԵՏԱՂՆԵՐԻ, հակակոռոզ. պաշտպ–յան միջոցառումների համալիր, որոնք ուղղված են մետաղների կոռոզիայի (կերաքայքայման) նվազեցման

նպատակով: Իրականացվում է քիմիապես ակտիվ միջավայրից մետաղների մեկուսացման կամ շփման միջավայրի ագրեսիվության նվազեցման միջոցով:

ՊԱՇՈՒՏԻՆ Վիկտոր Վասիլևիչ (1845–1901), ռուս. ֆիզիոլոգ: Ռուսաստանում ախտաբան. ֆիզիոլոգիայի հիմնադիրներից: Հեղինակ է ախտաբան. ֆիզիոլոգիայի ռուս. առաջին ձեռնարկի (1878–81):

ՊԱՉԱԼԻԱ Շարախ Աբզահովիչ (1914–2000), աբխազ դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1982): Աբխազ. պրոֆեսիոնալ թատրոնի առաջին գործիչներից: 1930–66-ին (ընդհատումով)՝ Աբխազ. դրամատիկ. թատրոնի (1976-ից՝ տնօրեն) դերասան (Դաուր՝ Դ. Գուլիայի «Հերոսների ժայռը», Յագո՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», ևն):

ՊԱՉԻՆՈՏԻ (Pacinotti) Անտոնիո (1841–1912), իտալացի ֆիզիկոս-էլեկտրատեխնիկ: 1860-ին կառուցել է անկախ գրգռումով մազնիսաէլ. մեքենա, որտեղ առաջին անգամ կիրառել է օղակաձև խարիսխ:

ՊԱՉՈԼԻ (Pacioli) Լուկա (1445–1514), իտալացի մաթեմատիկոս: Շարադրել է թվաբ. գործողությունների, մի քանի հանրահաշվ. հավասարումների լուծման և երկրչափ-յան մեջ կիրառման կանոններ, երկրչափ. համամասնությունների տեսությունը:

ՊԱՉՈՒԿԱ (Pachuca), ք. Մեքսիկայում, Հիդալգո նահ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 380 հզ. (2010): Արծաթի արդյունահանման կենտրոն է: Ունի համալսարան, ճարտ. հուշարձան (XVI–XVIII դդ.):

ՊԱՊ (մոտ 353–374), Հայոց թագավոր՝ 370-ից՝ Արշակունի արքայատոհմից: Հաջողրդել է հորը՝ *Արշակ Բ*-ին: Գահակալել է Հռոմ. կայսրության օժանդակությամբ: Հայ-հռոմ. միացյալ բանակով ջախջախել է Հայաստան ներխուժած պարսկ. զորքերին (տես *Զիրավի ճակատամարտ 371*): Վերականգնել է Հայաստանի տարածք. ամբողջականությունը, չափավորել եկեղեցու լիազորությունը և ձգտել քաղ. անկախության՝ ձերբազատվելու համար Հռոմ. կայսրության գերիշխանությունից: Սպանվել է կայսեր հանձնարարությամբ:

ՊԱՊԱԲԻՆ, բուս. ֆերմենտ, կատալիզում է սպիտակուցների, պեպտիդների, ամիդների և էսթերների հիդրոլիզը: Զգալի քանակությամբ պարունակում է սեխածառի (պապայա) մեջ: Օգտագործում են մսնդի և թեթև արդ-յան մեջ (մսի փափկեցման, կաշվի մշակման համար):

ՊԱՊԱԼԵԿՍԻ Նիկոլայ Դմիտրևիչ (1880–1947), ռուս. ռադիոֆիզիկոս, ռուս. ռադիոֆիզիկայի և ռադիոտեխնիկայի հիմնադիրներից: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939): Հիմնարար աշխ-ներ է կատարել (Լ. Ի. *Մանդելշտամի* հետ) ոչ գծային տատանումների ուսումնասիրման ոլորտում, մշակել էլ. տատանումների պարամետր. գրգռման եղանակ, առաջարկել ռադիոինտերֆերենցիայի մեթոդը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942):

ՊԱՊԱԿԱՆ ՄԱՐՋ, Եկեղեցական մարզ, Պապական պետություն (իտալ.՝ Stato Pontificio), կրոնապետություն Միջին Իտալիայում (կենտրոնը՝ Հռոմ)՝ *Հռոմի պապի* գլխավորությամբ՝ VIII–XIX դդ-ում: Մինչև 962-ը եղել է Կարոլինգների կայսրության, այնուհետև՝ *Հռոմեական սրբազան կայսրության* կազմում: Պ. մ-ի սահմանները բազմիցս փոփոխվել են: 1929-ին պապ. մի փոքր պետություն վերստեղծվել է Հռոմ ք-ի մի մասում (տես *Վատիկան*):

ՊԱՊԱՅԱՆ Ալբերտ Վազգենի (1936–2002), մանկաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (1974), պրոֆ. (1975): ՌԴ գիտ. վաստ. գործիչ (1997): ՌԲՆԳԱ անդամ (1998): Եղել է Ս. Պետերբուրգի գլխ. մանկ. նեֆրոլոգը (1974-ից): «Բժշկական մեծ հանրագիտարանի» (ռուս.) խմբագր. խորհրդի անդամ: ՌԴ մանկաբույժ-նեֆրոլոգների ընկերակցության փոխնախագահ (1996-ից): Սպանվել է անհայտ հանգամանքներում:

ԽՍՀՄ ԲԳԱ Մ. Ս. Մասլովի անվ. մրց. (1975), Ժողդ-ների բարեկամության շքանշան (1983):

ՊԱՊԱՅԱՆ Արամաշոտ (Աշոտ) Պետրոսի [1911–1998, 1945-ից իր անվանն է միացրել վաղամեռիկ եղբորորդու՝ դրամատուրգ Արամ Պապայանի (1918–1945) անունը], դրամատուրգ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1975): Հայտնի է դարձել եղբորորդու հետ գրած «Մեծ հարսանիք» (բեմ.՝ 1944) կատակերգությամբ: Բեմադրվել են Պ-ի «Շշմեցուցիչ հարված» (1956), «Անաղուհաց փեսան» (1956), «Կենդանի հանգուցյալ» (1963), «Համեցեք Հակոբ Նշանիչի ծննդին» (1965), «Աշխարհին, այո, շուռ է եկել» (1967), «Արտասահմանյան փեսացու» (1972) և այլ կատակերգությունները: Նրա սցենարներով նկարահանվել են ֆիլմեր:

ՊԱՊԱՅԱՆ Նադեժդա Համբարձումի (1868–1906), երգչուհի (քնարակոլորատուր. սոպրանո): Հայ առաջին օպեր. երգչուհին: 1891–1904-ին հանդես է եկել Նեապոլի «Սան Կառլո», Միլանի «Ալհամբրա», 1893–94-ին՝ Թիֆլիսի օպեր., 1900–04-ին՝ Ս. Պետերբուրգի Մարիինյան, 1904–05-ին՝ Փարիզի «Օպերա-կոմիկ» թատրոններում (Շ. Գունոյի «Ֆաուստ», Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», Ջ. Վերդիի «Տրավիատա», «Ռիգոլետտո», Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն», ևն):

ՊԱՊԱՆԻՆ Իվան Դմիտրևիչ (1894–1986), ռուս. բևեռախույզ, փոխծովակալ (1943): Սոց. աշխ. հերոս (1937, 1940): Ղեկավարել է խորհրդ. 1-ին դրեյֆող «ՀԲ-1» կայանի աշխ-ները (1937–38): Հեղինակ է «Կյանքը սառցակտորի վրա» (1938) և «Սառույց և բոց» գրքերի:

ՊԱՊԱՆՈՎ Անատոլի Դմիտրևիչ (1922–1987), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1973): 1949-ից՝ Սոկվայի սատիրայի թատրոնի դերասան (Յուսով՝ Ա. Ն. Օստրովսկու «Եկամտաբեր պաշտոն», Ֆամուսով՝ Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս», Խլուդով՝ Մ. Ա. Բուլգակովի «Վազք»): Նկարահանվել է կինոյում («Ողջերն ու մեռածները», «Ադամանդե ձեռքը», «Բելոռուսական կայարան», «Հիսուներեքի ցուրտ ամառը...» ևն): Գրոտեսկը, հումորը զուգորդել է հոգեբ. խոր ապրումների և դրամատիզմի հետ: Մուլտֆիլմերի հնչունավորման վարպետ (Գայ՝ «Դե՛, սպասի՛ր», 1969–81, ևն) է: ԽՍՀՄ Պետ. մրց. (1989, հետմահու):

ՊԱՊԱԶԱՆՅԱՆ Վասակ (1847–1893), խմբ., մանկավարժ, հաս. գործիչ: 1877–78-ին՝ Շուշիի թեմ. դպրոցի տեսուչ, 1880–84-ին՝ Երևանի անդրանիկ պարբ-ի՝ *«Պաակ»*-ի խմբ-հրտ.:

ՊԱՊԱՄՈՒԿԻՐԻ Իվան Գեորգիի (1902–1980), աբխազ գրող: ՎԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1968): Աբխազ. ԻԽՍՀ ժող. գրող (1977): Հեղինակ է «Թեմիր» (1937) աբխազ. առաջին սոցիալ-կենցաղ. թեմայով վեպի, «Խիմուրի ուղին» (գիրք 1–3, 1949–63, վերահրտ.՝ «Կնոջ պատիվը» վերնագրով) էպոպեայի, «Էրցախուի ստորոտում» (1953) վեպի, նաև վիպակների, պատմվածքների:

ՊԱՊԱՎԵՐԻՆ (Papaverinum), սպազմոլիտիկ դեղանյութ: Ալկալոիդ է, պարունակվում է *օպիումում*, ստացվում է նաև սինթետիկ ճանապարհով: Օգտագործում են *կրծքային հեղձուկի* (ստենոկարդիա), հիպերտոնիկ հիվանդության, անգարի, լեղապարկի բորբոքման, հաստ աղիի բորբոքման (կծկանքային) և միզուղիների կծկանքի դեպքերում:

ՊԱՊԱՔԱՐԻ ԼԵՌՆԱՇԽԱԹ, ՀՀ Տավուշի մարզի ծայր հս-ում: Զգվում է Դեբեդի հովտից մինչև Կուր և Խրամ գետերի միախառնման վայրը: Երկ՝ 24 *կմ*, միջին բարձր.՝ 600 *մ*: Ստորոտին կան արտաբերման կոներ, տեղ-տեղ՝ նոսրանտառներ և չորասեր թփուտներ:

ՊԱՊԵՆ (Papin) Դենի (1647–1714/12), ֆրանսիացի ֆիզիկոս, ջերմ. շարժիչի գյուտարարներից: Հայտնագործել է պաշտպանիչ կափույրով ջերմ. կաթսա (1680), մի քանի ջրամբարձ մեքենաներ: 1690-ին նկարագրել է գոլորշամթն. շարժիչի փակ թերմոդինամիկ. ցիկլը, բայց աշխատող շարժիչ պատրաստել չի կարողացել:

ՊԱՊԵՌՈՆ, **Պապառոն**, բերդ (այժմ՝ ավերակ) Լեռն. Կիլիկիայում՝ Տավրոսի ստորոտին՝ Տարսոն ք-ից հս-արմ.: XI դ-ի կեսից մտել է *Աբլղարիր Արծրունու* տիրույթների մեջ: 1070-ական թթ-ին անցել է *Հեթումյաններին*: XIV դ-ի 2-րդ կեսին Եգիպտոսի արաբ. սուլթանությունը գրավել ու կործանել է բերդը: Պահպանվել են դղյակի, եկեղեցու, գեղաքանդակ վառարանի և այլ շինությունների մնացորդներ:

ՊԱՊԻԼՈՄԱ (< լատ. papilla – պտուկ և *...ոմա*), մարդու և կենդանիների մաշկի կամ լորձաթաղանթների բարորակ ուռուցք: Պտկաձև է կամ «ծաղկակաղամբի նման»:

ՊԱՊԻԿ ԻՇԽԱՆ, **Նորաշխարհյան** (Ենիտունյան Պապիկ Մարկոսի), **Պապիկ փաշա** (1846–1886), Զեյթունի 1878-ի ապստամբության ղեկ.: Պ. Ի-ի կոչով Զեյթունի բնակիչները գվոզ-ից վտարել են թուրք պաշտոնյաներին և մի քանի տարի եղել կիսաանկախ: Նա իր ջոկատով ամրացել է լեռներում: Թուրք. կառ-յունն ստիպված Պ. Ի-ին ճանաչել է Զեյթունի քաղաքագլուխ: Պաշտոնավարել է ցկյանս:

ՊԱՊԻԿՅԱՆ Ալբերտ Ստեփանի (1926–1997), գեղանկարիչ: ՌԴ վաստ. նկարիչ (1971): Հեղինակ է տաք գույներով բնանկարների («Ամպրոպից առաջ», 1969, «Ծիրանի ծառ», 1970, «Հողմահույզ օր», 1974, «Սևան», 1977), դիմանկարների, նատյուրմորտների և այլ գործերի: ԽՍՀՄ Դեղարվ-ի ակադ-ի արծաթե մեդալ (1979):

ՊԱՊԻԿՅԱՆ Արտավազդ Սարգսի (ծ. 1936), գեղանկարիչ: Հեղինակ է նուրբ գունաշարով բնանկարների, դիմանկարների, նատյուրմորտների («Բանանկար», 1963, «Մարտիկ», 1976, «Նամակ», 1983, «Շերենցի դիմանկարը», 1985, «Հարիսա», 1987, «Սումգայիթ», 1988, «Ծաղիկներ», 1994, «Մարմաշեն», 1999, «Նատյուրմորտ», 2002, ևն):

ՊԱՊԻԿՅԱՆ Էմմա Թորգոմի (ծ. 1964), երգչուհի (սոպրանո): ՀՀ վաստ. արտիստ (2005): Վերապատրաստվել է Միլանի «Լա Սկալա» թատրոնում (1987–90), 1988-ից՝

ԵՕԲԹ-ի մեներգչուհի (Վիոլետտա, Ջիլդա, Ռեզղեմոնա, Ադիդա՝ Ջ. Վերդիի «Տրավիատա», «Ռիգոլետտո», «Օթելլո», «Աիդա», Լակմե՝ Լ. Դելիբի «Լակմե», Նորմա՝ Վ. Բելլինիի «Նորմա», Անուշ՝ Ա. Տիգրանյանի «Անուշ», ևն): Համերգ. երկացանկում՝ արևմտաեվրոպացի, ռուս, հայ կոմպոզիտորների գործերից: 1999-ից՝ Փարիզում: Մ. Ի. Գլինկայի անվ. համամիութ. (1984, Երևան) և VI միջազգ. (1988–89, Իտալիա) մրցույթների դափնեկիր:

ՊԱՊԻՆԻ (Papini) Ջովաննի (1881–1956), իտալացի գրող, լրագրող: Հեղինակ է «Ողբերգական առօրեականություն» (1906) և այլ նովելների, «Հիսուսի պատմությունը» (1921, հայ.՝ «Պատմութիւն Քրիստոսի», 1926) կրոն. ուսումնասիրության, «Կենդանի Դանտեն» (1933) էսսեի, նաև արվ-ի պատմությանը վերաբերող աշխ-ների:

ՊԱՊԻՆՅԱՆ Բորիս Արտեմի (1912–1993), խորհրդ. բանակի ինտենդանտ. ծառայության գեն-մայոր (1963): Պատասխանատու աշխ. է կատարել ԳԴԵմՀ-ում տեղակայված խորհրդ. զորախմբում: Զորացրվել է 1967-ին: ԽՍՀՄ Կարմիր աստղի (2), Կարմիր դրոշի, ՀՄՊ 2-րդ աստիճանի (1985) շքանշաններ:

ՊԱՊԻՆՅԱՆ Վիգեն Արամայիսի (ծ. 1940), հողագետ: Գղտ. գիտ. դ-ր (2013): Աշխ-ները վերաբերում են Արարատյան դաշտի սողային աղուտ-ալկալի հողերի բարելավմանը:

ՊԱՊԻՐՈՒՍ (Cyperys papyrus), 1. բոշխազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույս: Աճում է արևադարձ. Աֆրիկայում: Հին ժամանակներում մշակվել է Եգիպտոսում, Պաղեստինում և Հվ. Եվրոպայում: Ցողուններն օգտագործել են սննդի մեջ, գործվածքների, կոշիկի, լաստերի ևնի պատրաստման համար: 2. Պ-ի ցողունների երկայն. շերտերից պատրաստվող գրելանյութ: Հայտնագործվել է Հին Եգիպտոսում մ. թ. ա. մոտ III հզ-ամյակի սկզբին և օգտագործվել մինչև վաղ միջնադար (փոխարինվել է ***մագաղաթով***):

ՊԱՊԼՈՐ (Muscari), **վարդապետիկ**, հակինթազգիների ընտանիքի խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 50 (այլ տվյալներով՝ 60) տեսակ, ՀՀ-ում՝ 7 (նրբածաղիկ Պ., կովկաս. Պ., Շովիցի Պ. ևն)՝ Շիրակի, Կոտայքի, Արարատի, Սյունիքի և այլ մարզերում: Աճում է չոր նոսրանտառներում, կիսաանապատներում, խճոտ ու քարքարոտ լանջերին, ալպ. մարգագետիններում ևն: Փայլուն Պ. հազվագյուտ տեսակ է, հանդիպում է Տավուշի մարզի մարգագետիններում, անտառի բացատներում. գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՊԱՊԿՈՎԻՉ Պյոտր Ֆեոդորովիչ (1887–1946), ռուս նավաշինարար: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1933), ճարտարագետ, փոխծովակալ (1940): Աշխ-ները վերաբերում են նավի շին. մեխանիկայի, առաձգականության տեսության հարցերին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946):

ՊԱՊՅԱՆ Անատոլի Ղազարոսի (1924–2007), գեղանկարիչ: ՀՀ ժող. նկարիչ (1983): Պրոֆ. (1984): Գործերն աչքի են ընկնում վառ արտահայտչականությամբ («Մեղեդի», 1960, «Որդիները», 1965, «Առավոտ», 1978, «Օջախ», 1983, «Գարուն ա, ձուն ա արել», 2000, «Ռեքվիեմ ըստ Նարեկացու», 2003, եռապատկեր, «Առավոտ», «Կեսօր», «Երեկո», երեքն էլ՝ 2004, ևն):

ՊԱՊՅԱՆ Էդուարդ Արմենակի (1924–1995), ճարտ.: ՀՀ վաստ. ճարտ. (1968): Արմենակ ***Տեր-Հարությունյանի*** որդին: Հեղինակ է Արարատ (1951), Վայք (1957), Գյումրի (1989–2000) ք-ների գլխ. հատակագծերի և Պ. Սևակի տուն-թանգարանի (1960–71, գ. Զանգակատուն), համահեղ.՝ Երևանի մետրոպոլիտենի 1-ին հերթի շին-յան (1967, թեմայի ղեկ.) և ընդարձակման գլխ. հեռանկար., Երևանի կենտրոնի նախագծերի, 1990–2010-ի գլխ. հատակագծի տեխնիկատնտ. հիմնավորման ևն:

ՊԱՊՅԱՆ Հասմիկ Հարությունի (ծ. 1961), երգչուհի (սոպրանո): ՀՀ ժող. արտիստ (2004): 1984–92-ին՝ ԵՕԲԹ-ի, 1992-ին՝ Վարշավայի, 1993–96-ին՝ Բոննի օպեր., 1996-ից՝ Վիեննայի «Շտատսօպերա» թատրոնների մեներգչուհի (Ռոզինա՝ Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», Տոսկա՝ Ջ. Պուչչինիի «Տոսկա», Աիդա՝ Ջ. Վերդիի «Աիդա», Նորմա՝ Վ. Բելլինիի «Նորմա», Օլիմպիա՝ Տ. Չուխաճյանի «Արշակ Բ», Անուշ՝ Ա. Տիգրանյանի «Անուշ», ևն): Հանդես է եկել նաև Միլանի «Լա Սկալա», Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերա», Մոսկվայի Մեծ, Փարիզի, Տոկիոյի, Սանտյագոյի, Թել Ավիվի, Հռոմի «Սանտա Չեչիլիա» և այլ օպեր. թատրոններում: Համերգ. երկացանկում՝ արևմտաեվրոպացի, ռուս, հայ կոմպոզիտորների երկեր:

Այսրկովկաս. (1) և միջազգ. (4) մրցույթների դափնեկիր, ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» (2005) շքանշան, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2017):

ՊԱՊՅԱՆ Մացակ Պետրոսի (1901–1962), պետ. գործիչ: 1937-ից՝ ՀԽՍՀ ԿԳԿ նախագահ, 1938–54-ին՝ ԳԽ նախագահության նախագահ:

Լենինի (2), ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի, ՀՄՊ 1-ին աստիճանի շքանշաններ:

ՊԱՊՅԵ ՄԱՇԵ (ֆրանս.՝ papier mâché – ծամծմված թուղթ), մանրաթել. նյութերի (թուղթ, ստվարաթուղթ) և սոսնձի, օսլայի, գիպսի ևնի խառնուրդ, որը հեշտությամբ ձևավորվում է: Պ. մ-ից պատրաստում են կենցաղ. և դեկորատիվ առարկաներ:

ՊԱՊՈՅԱՆ Արամ Վարդգեսի (ծ. 1959), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (2004): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2010): 2011–16-ին՝ ՀՀ ԳԱԱ ֆիզ. հետազոտությունների ինստ-ի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են լազեր. ֆիզիկայի, ատոմ. ֆիզիկայի և ոչ գծային օպտիկայի ուսումնասիրությանը: ՀՀ նախագահի (2014), «ICO Գալիլեո Գալիլեյի» (2015) մրց-ներ:

ՊԱՊՈՅԱՆ Արտաշես Համբարձումի (ծ. 1928), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ-ր (1987), պրոֆ. (1988): Հեղինակ է «Զափածոյի լեզվական արվեստի հարցեր» (1976), «Ակնարկներ Պարույր Սևակի բառապաշարի և տաղաչափության» (1991), «Հայագիտական հետազոտություններ» (2007) և այլ աշխ-ների:

ՊԱՊՈՅԱՆ Ելենա Վլադիմիրի (1933–1995), նյարդաֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ-ր (1955): Աշխ-ները վերաբերում են ուղեղիկի, գլխուղեղի կեղևի և ողնուղեղի շարժիչ կորիզների գործունեության նյարդաֆիզիոլոգ. մեխանիզմների, ուղեղիկի կեղև. համակարգի նեյրոն. կազմավորման հարցերին: Ուղեղի հետազոտության (1986), Շարժողության ֆիզիոլոգիայի ուսումնասիրության (1989-ից) միջազգ. կազմ-յունների անդամ:

ՊԱՊՈՅԱՆ Մկրտիչ Հովհաննեսի (ծ. 1956), գեղանկարիչ: Հեղինակ է կոմպոզիցիաների («Արտացոլում», 1997, «Երաժշտություն», եռանկար, 1998, «Արվեստանոցում», 1999, ևն), բնապատկերների («Անի», 2011, «Քաղաքային բնանկար», 2014, «Լուսաբաց», 2016, ևն), նատյուրմորտների («Գարնանային տրամադրություն», 2017, «Քաղաքային բլյուզ», 2017, ևն), նաև «Խաչելություն» (2001), «Հիդալգո» (2002), «Ավետում» (2011) և այլ գործերի:

ՊԱՊՈՅԱՆ Ռուբեն Արտաշեսի (1921–1996), հետախույզ: Փառքի 3 աստիճանների շքանշանների ասպետ (1944, 1944, 1946)՝ Կարել. պարանոցում, Մերձբալթիկայում ու Լեհաստանում, Արլ. Պրուսիայում մղված մարտերում ցուցաբերած խիզախության համար:

ՊԱՊՈՅԱՆ Սիմոն Ավետիքի (1925–2003), բժիշկ: Բժշկագիտ. դ-ր, պրոֆ.: ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ: Զբաղվել է ճառագայթաակտիվ նյութերի և ԱՄՃ-ի ուռուցքածին հատկությունների, ուռուցքների, դեղաբուժության հարցերով: Համաշխ. ուռուցքաբան. ընկ-յան անդամ (1963–95), ՀՀ ԱՆ գլխ. ճառագայթաբան (1965–95), ՀՀ ԳԱԱ ճառագայթակենսբ. գիտ. խորհրդի նախագահ (1970–95):

ՊԱՊՈՅԱՆ Վլադիմիր Վլադիմիրի (1937–2004), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1990), պրոֆ. (1991): Աշխ-ները վերաբերում են ձգողականության տեսությանը, նեյտրոն. աստղերի ֆիզիկային: Ստացել է Էյնշտեյնի և Յորդան-Բրանս-Դիկեի ձգողականության տեսության հավասարումների ճշգրիտ լուծումներ: Աշխ-ները վերաբերում են ձգողականության տեսությանը, տիեզերքի էվոլյուցիայի հարցերին: ՀԼԿԵՄ մրց. (1970):

ՊԱՊՈՎԱՎԻՐՈՒՄՆԵՐ, ԴՆԹ պարունակող վիրուսների ընտանիք, որոնք առաջացնում են մարդու և կենդանիների ուռուցքներ (պապիլոմայի կամ գորտնուկի վիրուսներ, պոլիոմներ, կապիկների վակուոլացնող վիրուսներ):

ՊԱՊՈՎՅԱՆ Ալեքսեյ Սերգեյի (ծ. 1941), քանդ.: Գործերում («Յուլ», 1974, «Պրոմեթևս», 1970–80, «Կերպարանափոխություն», 1979, «Այծքաղ», 1994, «Արագիլ», 1994, ևն) գրոտեսկի, այլաբանության և այլ միջոցներով Պ. հասել է դրամատիկ. երանգների, շոշափել բարոյաէթիկ. խնդիրներ:

ՊԱՊՈՎՅԱՆ Գեորգի Սարգսի (1895–1997), հիգիենիստ: Բժշկ. գիտ. դ-ր, պրոֆ.: ՀԽՍՀ վաստ. բժիշկ: Աշխ-ները վերաբերում են վարակիչ հիվանդությունների հիգիենային, համաճարակաբանությանն ու կանխարգելմանը:

ՊԱՊՊ (Papp) Լասլո (1926–2003), հունգար բռնցքամարտիկ: Օլիմպ. խաղերի (1948, 1952, 1956), Եվրոպայի սիրող. (1949, 1951) և պրոֆեսիոնալ (1962–66) բռնցքամարտի չեմպիոն:

ՊԱՊՊ (Պապիրովսկի) Ջոզեֆ (1921–1991), ամերիկացի ռեժ.: 1953-ին Նյու Յորքում կազմակերպել է շեքսպիրյան փառատոն, Կենտր. այգում 1960-ից անվճար ներկայացրել է Շեքսպիրի գրեթե բոլոր պիեսները: 1965-ին Նյու Յորքում հիմնադրել է «Փաբլիք թիեթր»-ը (միաժամանակ օգտագործել է 6 բեմահարթակ):

ՊԱՊՊՈՍ (Pappos) Ալեքսանդրիացի (290–350), հույն մաթեմատիկոս: «Երկեր» խորագրով 8 գրքերից պահպանվել են

6-ը, որտեղ անդրադարձել է թվաբ-յան, երկրչփ-յան, աստղագիտ-յան հարցերին: «Երկրագրություն» աշխ-յան մասին, որը Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրական ձեռնարկի» համառոտագրությունն է, տեղեկություն կա «Աշխարհացոյց»-ում:

ՊԱՊՈՒԱ (Papua), նեղուց Կորալյան ծովում՝ Նոր Գվինեա կղզու հվ-արլ. ափերի մոտ: Երկ.՝ 150 *կմ*, լայն. մուտքի մոտ՝ 330 *կմ*, խոր.՝ մինչև 969 *մ*: Նվինգստ-ը՝ Պորտ Մորսբիին:

ՊԱՊՈՒԱ ՆՈՐ ԳՎԻՆԵԱ (Papua New Guinea), **Պապուա Նոր Գվինեա Անկախ Պետություն** (Independent State of Papua New Guinea, 1975-ից), պետություն Օվկիանիայում՝ Խաղաղ օվկ-ի հվ-արմ. մասում: Ընդգրկում է Նոր Գվինեա կղզու արլ. մասը, Բիսմարկի կղզեխումբը, Սողոմոնի կղզիների մի մասը, Դ'Անտրկաստո և այլ կղզիներ: Տարածքը՝ 462,8 հզ. *կմ*^{2}, բն.՝ 5,9 մլն (2009): Մայրաքաղաքը՝ *Պորտ Մորսբի*: Պետ. լեզուն՝ անգլ.: Կառավարման ձևը՝ սահմանադրամիապետ.: Պետության գլուխը Մեծ Բրիտանիայի թագուհին է՝ ներկայացված գեն-նահանգապետով: Օրենսդիր մարմինը՝ միապալատ Ազ: Բաժանված է 19 պրովինցիայի և մայրաքաղաք. մարզի: Հավատացյալների մեծ մասը քրիստոնյա է, կան նաև ավանդ. հավատալիքների հետևորդներ: Անդամակցում է ՄԱԿ-ին, Ազգերի համագործակցությանը ևն: Պ. Ն. Գ. զարգացող պետություն է: Տնտ-յան հիմքն արդյունահանող արդ-յունն ու գղտ-յունն են: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 2,4 հզ. ԱՄՆ դոլար է (2010): Արտահանում է պղնձի խտանյութ, ոսկի, սուրճ, կակաո, թեյ, կոկոսի ձեթ ևն, ներմուծում պարեն, խմիչք, ծխախոտ, մեքենաներ, սարքավորումներ, արդ. ապրանքներ: Դրամ. միավորը՝ կինա:

Մինչև եվրոպ. գաղութացումը Պ. Ն. Գ-ի տարածքում բնակվել են պապուասներ և մելանեզիացիներ: 1884-ին Նոր Գվինեա կղզու հվ-արլ. մասում, որը կոչվել է Պապուա, հաստատվել է անգլ. պրոտեկտորատ, հս-արլ. մասը զավթել է Գերմանիան: 1888-ին Պապուան հայտարարվել է Մեծ Բրիտանիայի գաղութ, իսկ XX դ-ի սկզբին տրվել է Ավստրալ. Միությանը: ԱՀՊ-ի ժամանակ ավստրալ. զորքերը գրավել են կղզու նաև հս-արլ. մասը. 1920-ին այդ տարածքը, որն անվանվել է Նոր Գվինեա, տրվել է Ավստրալ. Միությանը, ապա՝ Ազգերի լիգայի ենթամանդատ. տարածք: ԵՀՊ-ից հետո Նոր Գվինեան Ավստրալ. Միության կառավարման տակ է՝ որպես ՄԱԿ-ի հովանավորության տարածք: 1949-ին ավստրալ. իշխանությունները վարչականորեն միացրել են Պապուան և Նոր Գվինեան: 1973-ին Պ. Ն. Գ-ի տարածքը ստացել է ներքին ինքնավարություն: 1975-ից անկախ պետություն է:

ՊԱՊՈՒԱՍՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, լեզվախմբերի և մեկուսացած լեզուների (750–1000 լեզու), որոնք չեն պատկանում ավստրոնեզյան լեզվաընտանիքին, պայման. անվանումը: Տարածված են Նոր Գվինեայում, Սողոմոնյան կղզիներում, Բիսմարկի կղզեխմբում: Ցեղակց. կապերը հաստատված չեն:

ՊԱՊՈՒԱՄՆԵՐ, ժողդ-ների (Էնգա, Չիմբու, հագեն, կամանո, հուլի ևն) խումբ, Պապուա Նոր Գվինեայի հիմն. բնակչությունը: Ապրում են նաև Մելանեզիայում, Ինդոնեզիայում և Թիմոր կղզու արլ-ում: Ընդհ. թիվը՝ ավելի քան 5 մլն (2010): Խոսում են *պապուասյան լեզուներով*: Հավատացյալները հիմնականում քրիստոնյա են, կան նաև ավանդ. հավատալիքների հետևորդներ:

ՊԱՊՈՒԹՅՈՒՆ, կաթոլիկ. եկեղեցու բարձրագույն հիմնարկ, կրոնապետ. կենտրոն, որը ղեկավարում է *Հռոմի պապը*: *Պապական մարզի* ստեղծումով (756) սկիզբ է դրվել պապի աշխարհիկ իշխանության: XI դ-ում Պ. ընդարձակել և ամրապնդել է իր իրավունքները, ձեռնարկել *խաչակրաց արշավանքներ*, ստեղծել բազմաթիվ միաբանություններ, ասպետ. օրդեններ, *ինկվիզիցիա*, վաճառել *ինդուլգենցիաներ*: Պ-յանը լուրջ հարված է հասցրել *Ֆիլիպ IV Գեղեցիկը*, որը պապի աթոռանիստը Հռոմից տեղափոխել է Ավինյոն (1309–77, տես *Ավինյոնյան գերություն պապերի*): Պ. պայքարել է *բողոքականության* և այլ գաղափարախոսությունների դեմ:

ՊԱՊՈՒԽՅԱՆ Նուբար Ծերունի (1932–2001), ճարտ., ճարտ-յան պատմաբան: Չափագրել է Խոր վիրապ, Բղենո Նորավանք, Յախացքար վանքերը, Եղեգիսի Սբ Նշան և Զորաց, Գնդեվանքի Սբ Աստվածածին, Արուճի Սբ Գրիգոր եկեղեցիները: Հեղինակ է «Յունիքի ժողովրդական ճարտարապետությունը» (1972), «Թորոս Թորամանյան. կյանքը և գործը» (2005) գրքերի:

ՊԱՌԱՄԻՈՍ Եփեսոսցի, մ. թ. ա. V դ-ի 2-րդ կեսի հույն նկարիչ: Ստեղծագործել է Աթենքում (գործերը չեն պահպանվել): Անտիկ հեղինակները բարձր են գնահատել ծավալը եզրագծերով և լուսաստվերով վարպետորեն պատկերելու նրա հմտությունը:

ՊԱՌԼԵՐ (Parler), **Պառլերժ**, XIV–XV դդ-ի չեխ ճարտ-ներ: Աշխատել են Գերմանիայում և Չեխիայում: **Պետեր Պ.** (1330–1399), Պրահայում գլխավորել է Սբ Վիտի տաճարի (1374–85), Կառլի կամուրջի (1357–78) շին-յունները: Պետեր Պ-ի հայրը՝ **Հենրիխ I Պ.** (1300-ական թթ.–1371), Հվ. Գերմանիայում ստեղծել է եկեղեցու դահլիճ տիպը: **Միխայել II Պ.** (ծ. թ. անհտ–1387/88), 1383-ից ղեկավարել է Ստրասբուրգի գոթ. տաճարի շին-յունը:

ՊԱՌՆԱԻԲԱ (Parnaiba), գետ Բրազիլիայում: Երկ.՝ 1450 *կմ* (այլ տվյալով՝ 1700 *կմ*), ավազանը՝ 350 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 2400 *մ*^{3}/*վ*: Թափվում է Ատլանտ. օվկ.: Նավարկելի է Տերեզինա ք-ից ներքև:

ՊԱՌՆԱՆԱՍ Յակով Օսկարովիչ (1884–1949), ռուս. կենսաքիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ (1942) և ԲԳԱ (1944) ակադ.: Աշխ-ները վերաբերում են ածխաջրերի հյուսվածք. փոխանակությանը և մկան. կծկման կենսաքիմիային: ԽՍՀՄ-ում առաջիններից է կիրառել իզոտոպ. մեթոդը կենսաքիմիայում: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942):

ՊԱՌՆԱՍ, լ-զանգված Հունաստանում՝ Կորնթոսի ծոցից հս: Բարձր.՝ 2457 *մ*: Հինհուն. դից-յան մեջ Պ. համարվել է Ապոլոնի և մուսաների բնակության վայրը: Պ-ի հվ. ստորոտին էր *Դելփիքը*՝ Ապոլոնի նշանավոր տաճարով: Փխբ. իմաստով՝ Պ. են անվանում բանաստեղծների խմբակցությունը, պառնաս. ծաղիկներ՝ բանաստեղծությունները, պառնաս. քույրեր՝ 9 մուսաներին:

ՊԱՌՆԱՍՅԱՆ Նվարդ Ավետիսի (1930–1990), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ-ր (1972), պրոֆ. (1981): Հեղինակ է «Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում» (1970), «Քերականական համանունները ժամանակակից հայերենում» (1979), «Նախադասության քերականական կարգերը ժամանակակից հայերենում» (1986) և այլ աշխ-ների: ՀԽՍՀ Պետ. մրց. (1985):

ՊԱՌՆԻՑԿԻ (Parnicki) Թեոդոր (1908–1988), լեհ գրող: Հեղինակ է «Աեցիոսը՝ վերջին հռոմեացին» (1937), «Արծաթե արծիվներ» (հ. 1–2, 1944–45), ««Ժողովուրդների համաձայնության» վախճանը» (հ. 1–2, 1955), «Լուսնի դեմքը» (մաս 1–3, 1961–67), պատմաֆանտաստիկ. «Ես դուրս կգամ անզեն» (1976) վեպերի, նաև էսսեների:

ՊԱՌՆՈՒԿ (Պառնոխ) Սոֆյա Յակովլեվնա (1885–1933), հրեա ռուսագիր բանաստեղծուհի, թարգմանչուհի: Հեղինակ է «Բանաստեղծություններ» (1916), «Պիերիայի վարդերը» (1922), «Որթ» (1923), «Երաժշտություն» (1926), «Կես ձայնով» (1928) բանաստեղծությունների ժող-ների: Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի հիման վրա գրել է «Ալմաստ» օպերայի լիբրետոն (ռուս.):

ՊԱՍ (Paz) Օկտավիո (1914–1998), մեքսիկացի գրող: Հեղինակ է «Ազատություն ազնիվ խոսքով» (1949), «Արևելյան լանջը» (1969), «Շրջադարձ» (1976) բանաստեղծությունների, «Մենության լաբիրինթոսում» (1950, հայ.՝ 2012), «Հետգրություն» (1970), «Մարդակեր-մարդասերը» (1979) էսսեների, «Փոփոխական հոսանք» (1967), «Մեր դարի մարդիկ» (1984) ժող-ների: Նոբելյան մրց. (1990):

ՊԱՍՍԱԺ (ֆրանս.՝ passage – բառացի՝ անցում), 1. (երաժշտ.) ինչյունների հաջորդականությունն արագ շարժման ընթացքում: 2. (Հարտ.) առևտր. կամ զործառն. նշանակության շենքի տեսակ, որտեղ խանութները կամ գրասենյակները դասավորված են հարկերով՝ լայն անցուղու կողքերին, որպես կանոն՝ ապակեպատ: 3. (Սպորտ) ձիագնացության տեսակ՝ ոիթմիկ բարձր *վարգ*:

ՊԱՍՍԱԼՈՒՐՋ, ճագարների և նապաստակների ինվազիոն հիվանդություն: Հարուցիչները կլոր որդերն են, որոնք մակաբուծվում են հաստ աղիում: Ախտանշանները՝ տենդ, լուծ, կենդանիները նիհարում են, երբեմն՝ սատկում:

ՊԱՍՍԱՅ (Pasay), ք. Ֆիլիպիններում՝ Լուսոն կղի ափին՝ Մետրո-Մանիլա ագլոմերացիայի կազմում: Տրանսպորտ. հանգույց է: Բն.՝ 355 հզ. (2010): Ունի օդանավակայան:


ՊԱՍԿԱԼ (Pascal) Բլեզ (1623–1662), ֆրանսիացի մաթեմատիկոս, ֆիզիկոս, փիլ., գրող: 16 տարեկանում ձևակերպել է պրոյեկտիվ երկրչփ-յան հիմն. թեորեմներից մեկը (**Պասկալի թեորեմ**): Ֆիզ. հետազոտությունները վերաբերում են հիմնականում հիդրոստատիկային. ձևակերպել է (1653) նրա հիմն. օրենքը՝ *Պասկալի օրենքը*, սահմանել է հիդրավլիկ. մամլիչի գործողության սկզբունքը: Վերաբացահայտել է հիդրոստատիկ. պարադոքսը, հաստատել մթն. ճնշման գոյությունը՝ 1646-ին կրկնելով Է. *Տորիչելլիի* փորձը: Կարծիք է հայտնել մթն. ճնշման՝ բարձր-յանը զուգընթաց նվազման մասին, ապացուցել է, որ օդը կշիռ ունի, ճնշաչափի ցուցմունքը կախված է օդի խոնավությունից ու ջերմաստիճանից, որի շնորհիվ այն կարելի է օգտագործել եղանակի կանխատեսման համար: Ստեղծել է գումարող մեքենան:

Պ–ի «Նամակներ պրովինցիալին» (1656–57) երկը ֆրանս. երգիծ. արձակի գլուխգործոցներից է: Պ–ի անունով են կոչվել ճնշման չափման միավորը՝ *Պա*, Պասկալի եռանկյունին, ***Պասկալի խոհունջը,*** աստղակերպ, ծրագրավորման լեզու (Pascal, հեղինակ՝ Նիքլաոս Ուիրթ):

ՊԱՍԿԱԼ, ճնշման և մեխ. լարվածության չափման միավորը ՄՄՀ–ում, կոչվել է Բ. *Պասկալի* պատվին, նշանակումը՝ *Պա* (P_a): 1 *Պա* = $1 Ն/մ^2 = 10$ *դին/մ*$^2 = 0{,}10^2$ *կգ/մ*$^2 = 10^{-5}$ *բար* = $7{,}5 \cdot 10^{-3}$ *մմ սնդ.ս.* = 0,102 *մմ* ջր. ս.:

ՊԱՍԿԱԼԵՎԱ (Paskaleva) Ցվետանա (ծ. 1960), բուլղար լրագրող, օպերատոր, կինովավերագրող: ԼՂՀ ՊԲ գնդ. (1995): 1991–94–ին աշխատել է ԼՂ–ում, Գետաշենում, Շահումյանի շրջանում, լուսաբանել արցախյան հերոսամարտը, Ղարաբաղի խնդիրը ներկայացրել միջազգ. հանրությանը: Նկարահանել է «Ղարաբաղի վերքերը» (6 ֆիլմ, հայ., ռուս., անգլ.) վավերագր., «Ոգի և հավատ» (2011) փաստավավերագր. (նվիրված է Շուշիի ազատագրմանը) ֆիլմերը: «Նվիրյալները» հեռուստահաղորդաշարի հեղինակն ու վարողն է (2014–ից): ԼՂՀ գրողների միության «Եղիշե» մրց. (1993), ՀՀ Արիության (1996), «Մովսես Խորենացի» (2009), ԼՂՀ Երախտագիտ–յան (2015) մեդալներ:

ՊԱՍԿԱԼԻ ԽԽՈՒՆՋ, հարթ կոր (նկ.), M և M'կետերի բազմությունը, որոնք գտնվում են տվյալ շրջանագծի մեկ O կետից դուրս եկող գծի՝ շրջանագծի հետ հատման ուղղի P կետի 2 կողմերում՝ հավասար հեռ–յան վրա: 4–րդ կարգի հանրահաշվ. կոր է: Դիտարկել են Է. Պասկալը և նրա հայրը՝ Բ. *Պասկալը* (XVII դ.):



ՊԱՍԿԱԼԻ ՕՐԵՆՔ, արտաքին ուժերի ճնշումը հեղուկի մակերևույթին հեղուկով հավասարապես փոխանցվում է բոլոր ուղղություններով: Հաստատել է Բ. *Պասկալը* (1663): Պ. օ–ի վրա է հիմնված ***հիդրավլիկական մամլիչի*** և այլ հիդրավլիկ մեքենաների աշխ–ը:

ՊԱՍԿԵՎԻՉ Իվան Ֆեոդորովիչ (1782–1856), ռուս. զորապետ, գեն–ֆլդմ. (1829), 1827–ից՝ Կովկաս. առանձին կորպուսի հրամ., ապա՝ նաև Կովկասի կառավարչապետ: Ռազմ. արշավանքի ժամանակ ղեկավարել է կարևոր ճակատամարտերը (այդ թվում՝ Երևանի գրավումը. արժանացել է (1828) Երևանի կոմս տիտղոսի): 1828–ին ստորագրել է ***Թուրքմենչայի պայմանագիրը***: 1828–29–ի ռուս–թուրք. պատերազմի ժամանակ՝ Կովկաս. ռազմաճակատի հրամ.: 1831–ից՝ Լեհ. թագավորության փոխարքա: Պ–ի նախաձեռնությամբ ստեղծված գաղտնի հանձնաժողովի նախագծով կազմվել է *«Պոլոժենիե»*–ն (1836): 1853–56–ի Ղրիմի պատերազմի ժամանակ՝ բանակի հրամ. Բալկաններում (1853–54):

ՊԱՍԿԵՎԻՉՅԱՆ Սասուն Թադևոսի (ծ. 1939), կոմպոզիտոր: ՀՀ ժող. արտիստ (2014): 1980–2004–ին՝ Լոս Անջելեսում: «Հայաստան» հեռուստաընկ–յան և մշակութ. կենտրոնի (1988–2004, Լոս Անջելես) հիմնադիրը: Հեղինակ է երգերի («Դու հեռացար», «Հայր իմ», «Ներիր ինձ, մայրիկ», «Ամեն տեսակ երգ երգեցի», «Մինչև էգուց», «Դու երկու տառ», «Աշուղ Սայաթ–Նովի նման», «Մայրս», «Արագիլները» ևն):

ՊԱՍԿՈ (իսպ.՝ Pasco), տարածաշրջան Պերուի կենտրոնում: Ներառում է 3 պրովինցիա և 28 մարզ: Տարածքը՝ 25319 *կմ*^{2}, բն.՝ 280,4 հզ. (2007): Վարչ. կենտրոնը՝ Սեռո դե Պասկո: Տարածքում է աշխարհի խոշորագույն արգելոցներից «Օկսապամպա–Աշանինկա–Յանեշա»–ն: Տարածքը՝ մոտ 1,8 մլն *հա*: 2010–ին ճանաչվել է որպես ՅՈՒՆԵՍԿՕ–ի կենսոլորտի արգելոց:

ՊԱՍԿՈԼԻ (Pascoli) Ջովաննի (1855–1912), իտալացի բանաստեղծ: Հեղինակ է «Կաստելվեկիոյի երգերը» (1903), «Ներբողներ և հիմներ» (1906) ժող–ների, «Զավակը» (1897) քննադատ. էսսեի:

ՊԱՍՄԱՃՅԱՆ Կարիկ (Կարապետ) Գրիգորի (1947–1989), բանաստեղծ, խմբ., թարգմանիչ, արվ–ի գործերի հավաքորդ («Կ. Պասմաճյան» պատկերասրահ, Փարիզ): Գրել է նաև անգլ.: Ապրել է Փարիզում, խմբագրել *«Նոր շինարար»* պարբ–ը: Հեղինակ է «Ծթաքարեր» (1973), «Բեղմնափոշի» (1976), «Անաւարտ խաղ» (1980), «Աւարտախաղ» (2005) և բանաստեղծությունների այլ ժող–ների: Կատարել է թարգմ–յուններ (հայ–ից՝ անգլ., անգլ–ից՝ հայ.):

ՊԱՍՍԱԿԱԼԻԱ. (իտալ.՝ passacaglia, իսպ.՝ pasacalle, < pasar – անցնել և calle – փողոց), 1. իսպ. ինագույն պար (XVI–XVIII դդ.): Տեմպը՝ դանդաղ, երաժշտ. չափը՝ եռամաս: 2. Վեհաշուք, երբեմն՝ ողբերգ. բնույթի գործիք. (հաճախ՝ երգեհոն. կամ կլավիր.) երաժշտ. պիես՝ հիմնված բասօստինատի վրա (Յ. Ս. Բախի երգեհոնի դո մինոր Պ., Ք. Քուշնարյանի երգեհոնի Պ. և ֆուգա, ևն):

ՊԱՍՍԱՏՆԵՐ (գերմ. եզակի թվ.՝ Passat, հավանաբար՝ իսպ. viento de passade –բարենպաստ փոխադրում), օվկ–ների վրա արևադարձ. լայն–յուններում տարվա ընթացքում համեմատաբար հաստատուն ուղղությամբ փչող քամիներ: Հս. կիսագնդում ուղղությունը գլխավորապես հս–արլ. է, հվ–ում՝ հվ–արլ.: Հս. և Հվ. կիսագնդերի միջև Պ. զուգամիտության ներարևադարձ. գոտի է: Պ–ի հակառակ ուղղությամբ փչում են անտիցիկլոններ:

ՊԱՍՏԱ (Pasta, օրիորդ. ազգանունը՝ Նեգրի) Ջուդիտտա (1797–1865), իտալացի երգչուհի (սոպրանո): Համաշխ. ճանաչման է հասել Նորմայի, Ամինայի (Վ. Բելլինիի «Նորմա», «Սոմնամբուլա»), Աննա Բոլեյնի (Գ. Դոնիցետտիի «Աննա Բոլեյն») դերերգերի կատարմամբ, որոնք գրվել են Պ–ի համար:

ՊԱՍՏԵԼ, ուտեստ: Հասունացած ծիրանը, սալորը ևն եփելուց, տրորելուց ու քամելուց հետո եռացնում են մինչև թանձրանալը, ապա մոտ 1 *սմ* հաստ–յան շերտով փռում տախտակներին և չորացնում արևի տակ: Ստացված լավաշանման Պ. գլանաձև փաթաթում և պահում են հեռտգա օգտագործման համար:

ՊԱՍՏԵՌՆԱԿ Բորիս Լեոնիդովիչ (1890–1960), հրեա ռուսագիր գրող: Հեղինակ է «Քույր իմ՝ կյանք» (1922), «Թեմաներ և վարիացիաներ» (1923), «Երկրորդ ծնունդ» (1932) բանաստեղծությունների ժող–ների, «Ինը հարյուր հինգ թվական» (1925–26), «Լեյտենանտ Շմիդտ» (1926–27) պոեմների: «Սպեկտորսկի» (1924–31) չափածո վեպում, «Պահպանագիր» (1931), «Մարդիկ և իրադրություններ» (1957, հրտ.՝ 1967) ինքնակենսագր. վիպակներում, «Օդային ուղիներ» (1933) վիպակների ժող–ում բացառել է հեղ. բռնությունը: «Դոկտոր Ժիվագո» (հրտ.՝ 1957, Իտալիա, 1988, Ռուսաստան, հայ.՝ 1990, կինոնկար՝ 1965, ԱՄՆ, 2002, Մեծ Բրիտանիա, 2005, Ռուսաստան) վեպում ներկայացրել է ռուս մտավորականության ճակատագիրը XX դ–ի սկզբին, մերժել մոլեռանդ գաղափարախոսությունը: Վեպը 1958–ին արժանացել է Նոբելյան մրց–ի, որից հրաժարվել է ԽՍՀՄ–ից վտարվելու սպառնալիքի պատճառով (մրց–ը հանձնվել է որդուն 1988–ին):

ՊԱՍՏԵՐԱՅԻՄ, մանրէների ոչնչացումը հեղուկներում և աննդամթերքում՝ 100°C–ից ցածր ջերմաստիճանում (սովորաբար՝ 60–70°C) տարբեր տևողությամբ (հաճախ՝ 15–30 *ր*) տաքացնելով: Առաջարկել է Լ. *Պաստյորը*: Կիրառվում է կաթի, գինու, գարեջրի ևնի պահածոյացման համար:

ՊԱՍՏԵՐԵԼՆԵՐ (Լ. *Պաստյորի* անունով), ախտածին բակտերիաների սեռ, որոնք առաջացնում են կենդանիների և մարդու վարակիչ հիվանդություններ (***պաստերելոզներ***): Անշարժ են, օդակյաց և պայման. անօդակյաց:

ՊԱՍՏԵՐԵԼԱԶՆԵՐ, **արյունահոսային սեպտիցեմիա**, մարդու և կենդանիների վարակիչ հիվանդություն: Հարուցիչները ***պաստերելների*** խմբի օդակյաց, ոչ սպորավոր ցուպիկներն են: Ախտանշանները՝ մաշկի թարախախոցեր և ֆլեգմոններ՝ մարդկանց մոտ, ընդհ. վարակման նշաններ, շնչառ. և մարսող. օրգանների ախտահարում՝ կենդանիների մոտ, որոնք շատ հաճախ սատկում են:

ՊԱՍՏՅՈՐ (Pasteur) Լուի (1822–1895), ֆրանսիացի գիտնական, ժամանակակից մանրէաբանության և իմունաբանության հիմնադիրը: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. (1884) և պատվ. (1893) անդամ: Մոլների անհամաչափության վերաբերյալ Պ–ի աշխ–ները հիմք են դարձել ***փարաբծական քիմիայի*** համար: Բացահայտել է խմորման բնույթը: Հերքել է միկրոօրգանիզմների ինքնածնության տեսությունը: Ուսումնասիրել է մի շարք վարակիչ հիվանդությունների պատճառագիտությունը, մշակել հավերի խոլերայի (1879), սիբիրյան խոցի (1881), կատաղության (1885) դեմ կանխարգելիչ վակցինացման մեթոդ: Առաջարկել է աննդամթերքի մանրէազերծման մեթոդ (***պաստերացում***): Փարիզում հիմնել է (1888) և ղեկավարել է հետագայում իր անունով կոչված մանրէաբանության ԳՀԻ (Պաստյորի ինստ.):

ՊԱՍՏՈ (իսպ.՝ Pasto), ք. Կոլումբիայում, Նարինո դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 399,7 հզ. (2010): Հիմնադրել են իսպանացիները 1539–ին:

ՊԱՍՏՈՋՈՒԹՅՈՒՆ (իտալ.՝ pastoso – խմորանման), մաշկի ոչ խիստ արտահայտված ուռածություն, որը կարելի է շոշափել մատներով: Յուղանյութերով գեղանկարչության մեջ Պ. նշանակում է ներկաշերտի հաստություն, անհարթություն և արտահայտչություն:

ՊԱՎԱՐՈՏՏԻ (Pavarotti) Լուչանո (1935–2007), իտալացի երգիչ (տենոր): XX դ–ի 2–րդ կեսի օպեր. քնար. դերերգերի նշանավոր մեկնաբաններից: 1965–ից՝ Միլանի «Լա Սկալա» օպեր. թատրոնի (Ռուդոլֆ, Կավարադոսի՝ Ջ. Պուչչինիի «Բոհեմ», «Տոսկա», Ալֆրեդ, Հերցոգ՝ Ջ. Վերդիի «Տրավիատա», «Ռիգոլետտո», ևն) մեներգիչ: 1990–ից՝ Պ. Դոմինգոյի և Խ. Կառերասի հետ հանդես է եկել «Երեք տենոր» միջազգ. նախագծում:

ՊԱՎԵԶԵ (Pavese) Չեզարե (1908–1950), իտալացի գրող: Հեղինակ է «Ընկեր» (1947) հակաֆաշիստ. թեմայով, «Լուսին և խարույկներ» (1950) վեպերի, «Մահը կգա և կունենա քո աչքերը» (հրտ.՝ 1951) բանաստեղծությունների ժող-ի, «Ապրելու արհեստը» (հրտ.՝ 1952) օրագրի, նաև նամակների (հրտ.՝ 1966): Կատարել է թարգմ-յուններ: Ինքնասպան է եղել:

ՊԱՎԵԼ I (1754–1801), Ռուսաստանի կայսր՝ 1796-ից: Պյոտր III-ի և *Եկատերինա II*-ի որդին: Վարել է ծայրահեղ հետադիմ. քաղ-յուն: Գահ բարձրանալով՝ դադարեցրել է դեռևս 1796-ի գարնանը դեպի Անդրկովկաս սկսված ռուս. արշավանքը (տես *Պարսկական արշավանք 1796*): Ստորագրել է հրովարտակներ՝ Ռուսաստանի հայ գաղթավայրերի բնակչության իրավունքները, արտոնություններն ու առանձնաշնորհումները վերահաստատելու վերաբերյալ: Կայսեր 1801-ի հունվ-ի մանիֆեստով Արլ. Վրաստանը և Հայաստանի հս-արլ. մի շարք շրջաններ միացվել են Ռուսաստանին: Պ. I-ի գործունեությունն առաջացրել է ազնվականության վերնախավի մի մասի դժգոհությունը: Սպանվել է դավադրությամբ:

ՊԱՎԵԼ ԷԳԻՆԱՑԻ (625–690), բյուզանդացի բժիշկ: Հեղինակ է 7-հատորանոց աշխ-յան, որտեղ ամփոփել է հին հեղինակների բժշկ. գիտելիքները (հատկապես՝ վիրաբուժության և մանկաբարձության բնագավառների): Պ. Էգ-ու նկարագրած վիրահատությունները մինչև XVII դ. համարվել են դասական:

ՊԱՎԻԱ (Pavia), ք. Իտալիայի հս-ում՝ Լոմբարդիայում: Համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 70,3 հզ. (2010): Պատմաճարտ. հուշարձաններից են Սան Միգել ռոման. բազիլիկը (XII դ.), գոթ. ամրոցը և Սանտա Մարիա դել Կարմինե (XIV դ.) եկեղեցին, Վերածննդի (XV–XVI դդ.) տաճարը: Պ-ի մատույցներում 24.02.1525-ին Իտալ. պատերազմի ժամանակ (1494–1559) գերմ. կայսր Կառլոս V-ը ջախջախել է Ֆրանսիայի Ֆրանցիսկ I թագավորի զորքը, գերեվարել նրան և դուրս մղել Իտալիայի զավթած տարածքներից:

ՊԱՎԻԱՆՆԵՐ (Papio), նեղքիթ կապիկների սեռ: Մարմնի երկ.՝ մոտ 100, պոչինը՝ 5–70 *սմ*: Դունչը երկարացած է՝ շան դնչի նման: Հայտնի է 7 տեսակ (համադրիլ, բաբուին, դրիլ, մանդրիլ ևն)՝ Աֆրիկայի սավաննային անտառներում և սավաննաներում: Ապրում են մեծ հոտերով, վարում ցամաք. կենսակերպ: Լաբորատոր կենդանիներ են:

ՊԱՎԻՉ (Pavič) Միլորադ (1929–2009), սերբ գրող, գրկ-յան պատմաբան: Հեղինակ է «Խազարերենի բառարան: Վեպ-բառապաշար 100 000 բառով» (1984), «Քամին ներսից: Վեպ Գերոյի և Լեանդրի մասին» (1991) պատմ. վեպ-պարոդիաների, «Թեյով նկարված բնապատկեր: Վեպ խաչբառի սիրահարների համար» (1988) վեպ-առակի, «Այլ մարմին» (2006) և այլ վեպերի, «Հավերժություն և ևս մեկ օր (թատերական խաղացանկ)» (1993), «Մահճակալ երեքի համար» (2002) և այլ պիեսների, նաև պատմվածքների, բանաստեղծությունների: Հայ. հրատարակվել է «Աստղային պատմուճան» (2005) վեպը:

ՊԱՎԼԵՆԿՈ Պյոտր Անդրեևիչ (1899–1951), ռուս. գրող: Հեղինակ է «Երջանկություն» (1947) վեպի, նաև վիպակների, պատմվածքների, ուղեգրությունների, կինոսցենարների (այդ թվում՝ «Ալեքսանդր Նևսկի», 1938, Ս. Մ. Էյզենշտեյնի հետ): ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1947, 1948, 1950):

ՊԱՎԼԵՆԿՈ Վլադիմիր Անտոնովիչ (1917–1997), վերլուծ. սարքաշինության բնագավառի ռուս գիտնական: ՌԳԱ թղթ. անդամ (1979): Սոց. աշխ. հերոս (1977): Աշխ-ները վերաբերում են գազավերլուծիչների, զանգվածա- և ռադիոսպեկտրաչափների նախագծման ու չափումների հարցերին: Լենինյան մրց. (1963):

ՊԱՎԼԵՆԿՈՎ Ֆլորենտի Ֆեոդորովիչ (1839–1900), ռուս. հրտ.: Ս. Պետերբուրգում 1866-ից տպագրել է ավելի քան 750 անուն գիրք, այդ թվում՝ «Նշանավոր մարդկանց կյանքը» (1890-ից, 200 կենսագրություն) մատենաշարը, Ա. Ի. Գերցենի, Դ. Ի. Պիսարևի, Վ. Գ. Բելինսկու, Ֆ. Էնգելսի և ուր. ստեղծագործությունները, հանրագիտ. բառարան: Պ-ի հրտչ-յունը գործել է մինչև 1917-ը:

ՊԱՎԼԻԿՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ, քրիստ. աղանդավոր. շարժում Հայաստանում և Բյուզանդիայում VII–IX դդ-ում: Հակադրվելով եկեղեցուն՝ նրանք իրենց անվանել են «իսկական քրիստոնյաներ»: Առաջնորդներն էին Կոստանդին Սիլվանիոսը (VII դ.), Սերգիոս Տյուքիկոսը (VIII դ.), զորավար-առաջնորդները՝ Կարբեասը, Խրիսոխիրը (IX դ.): Պավլիկյան գաղափարները ծնունդ են տվել *Թոնդրակյան շարժմանը*: Աղանդին անդրադարձել է *Հովհաննես Գ Օձնեցին*:

ՊԱՎԼՈԳՐԱԴ, ք. Ուկրաինայում՝ Վոլչիա գետի ափին: Բն.՝ 108 հզ. (2010): Դոնբասի ածխարդյունահանման կենտրոններից է:

ՊԱՎԼՈԴԱՐ, ք. (1861-ից, հայտնի է 1720-ից) Ղազախստանում, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 355 հզ. (2010): Նվիկզատ՝ Իրտիշի ափին:

ՊԱՎԼՈԴԱՐԻ ՄԱՐԶ, վտմ Ղազախստանում: Տարածքը՝ 124,7 հզ. *կմ*², բն.՝ 752,8 հզ. (2014): Ունի 10 շրջան, մարզ. ենթակայության 3 քաղաք: Վարչ. կենտրոնը՝ *Պավլոդար*: Խոշոր արդ. կենտրոն է:

ՊԱՎԼՈՎ Իվան Պետրովիչ (1849–1936), ռուս ֆիզիոլոգ: Ս. Պետերբուրգի (1907), Ռուսաստանի (1917), ԽՍՀՄ (1925) ԳԱ-ների ակադ.: Բարձրագույն նյարդ. գործունեության վերաբերյալ ուսմունքի և ժամանակակից ֆիզիոլոգ. բարձրագույն դպրոցի հիմնադիրը: Ներդրել է քրոնիկ. փորձարարությունը, որը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու գործնականորեն առողջ օրգանիզմը: Իր մշակած պայման. ռեֆլեքսների մեթոդի օգնությամբ հաստատել է, որ հոգեկան գործունեության հիմքում ընկած են գլխուղեղի կեղևում տեղի ունեցող ֆիզիոլոգ. կենսընթացները: Բարձրագույն նյարդ. գործունեության վերաբերյալ Պ-ի հետազոտությունները մեծապես նպաստել են ֆիզիոլոգիայի, բժշկագիտ-յան, հոգեբ-յան և մանկավարժության զարգացմանը: Նոբելյան մրց. (1904):

ՊԱՎԼՈՎ Իվան Ֆոմիչ (1922–1950), ռուս օդաչու: Մայոր (1948): ԽՄ հերոս (1944, 1945): ՀՄՊ-ի ժամանակ՝ կործանիչ ավիացիայի էսկադրիլիայի հրամ.: Զոհվել է ավիավթարից:

ՊԱՎԼՈՎ Միխայիլ Ալեքսանդրովիչ (1863–1958), ռուս մետաղագործ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1932): Սոց. աշխ. հերոս (1945): Աշխ-ները վերաբերում են դոմնային շարժընթացների տեսությանը և դոմնային վառարանների հաշվարկին: Հեղինակ է «Թուջի մետաղագործությունը» հիմնարար դասագրքի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943, 1947):

ՊԱՎԼՈՎ Միխայիլ Գրիգորևիչ (1793–1840), ռուս փիլ., ագրոկենսաբան: Ֆ. Վ. Շելլինգի և Լ. Օկենի բնափիլ-յան հետևորդ: Հրատարակել է «Աթենեյ» (1828–30), «Ռուս հողագործ» (1838–39) ամսագրերը և «Ֆիզիկայի հիմունքները» (1833–36) հիմնարար աշխ-ը:

ՊԱՎԼՈՎ Նիկոլայ Վասիլևիչ (1893–1971), ռուս բուսաբան: Ղազախստանի բուսաբ. դպրոցի հիմնադիրը: Ղազախ. ԽՍՀ ԳԱ ակադ. (1946): Աշխ-ները վերաբերում են բուսահամակեցության, կարգաբանության, երկրաբուսաբ-յան հարցերին: Մասնակցել է բազմաթիվ արշավախմբերի աշխ-ների (Մոնղոլիա, Ղազախստան, Կամչատկա) և նկարագրել մոտ 100 նոր բույսերի տեսակներ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1948):

ՊԱՎԼՈՎԱ Աննա Պավլովնա (Մատվեևնա, 1881–1931), ռուս. բալետի արտիստուհի: 1899-ից՝ Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնի պարուհի (Նիկիա, Կիտրի՝ Լ. Մինկուսի «Բայադերկա», «Դոն Կիխոտ», Ժիզել՝ Ա. Ադանի «Ժիզել», ևն): Առավել ճանաչվել է «Մեռնող կարապը» (ըստ Կ. Սեն-Սանսի, բեմ.՝ Մ. Ֆոկինի) խորեոգրաֆիկ էտյուդով:

ՊԱՎԼՈՎԱ Նադեժդա Վասիլևնա (ծ. 1956), ռուս. բալետի արտիստուհի: ԽՍՀՄ ժող. արտիստուհի (1984): 1975–2000-ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մենապարուհի (Ժիզել՝ Ա. Ադանի «Ժիզել», Կիտրի՝ Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ», ևն): 1992–94-ին՝ Նադեժդա Պավլովայի բալետի թատրոնի, 1995-ից՝ Ռենեեսանս-բալետի գեղ. ղեկ.: Բալետի արտիստների ու բալետմայստերների համամիութ. մրցույթի 1-ին (1972, Մոսկվա), Բալետի արտիստների միջազգ. մրցույթի Մեծ (1973, Մոսկվա) մրց-ներ:

ՊԱՎԼՈՎԻՉ Նիկոլայ (1835–1894), ազգ. վերածնության շրջանի բուլղար նկարիչ, գրաֆիկ: Բուլղ. աշխարհիկ արվ-ի հիմնադիրներից: Հեղինակ է հայրենասիր., պատմ. թեմաներով նկարների («Ասպարուխ», մոտ 1867–69), վիմագրությունների, ռեալիստ. դիմանկարների («Ինքնադիմանկար», 1854):

ՊԱՎԼՈՎՍԿԻ Ալեքսանդր Իվանովիչ (1927–1993), ռուս. ֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (1991, թղթ. անդամ՝ 1979-ից): Սոց. աշխ. հերոս (1966): Աշխ-ները վերաբերում են նեյտրոն. ֆիզիկային և լիցքավորված մասնիկների արագացուցիչներին, իմպուլս. տեխնիկային: Էներգիայի մագնիս. կումուլյացման եղանակի հիմնադիրներից է: ԽՍՀՄ Պետ. (1953, 1983), Լենինյան (1966) մրց-ներ:

ՊԱՎԼՈՎՍԿԻ Եվգենի Նիկանորովիչ (1884–1965), ռուս. մակաբուծաբան: ԽՍՀՄ ԳԱ (1939) և ԲԳԱ (1944) ակադ., Տաջիկ. ԽՍՀ ԳԱ պատվ. անդամ (1951): Բժշկ. ծառայության գեն-լեյտ. (1943): Սոց. աշխ. հերոս (1964): ԽՍՀՄ աշխարհագր. ընկ-յան նախագահ (1952–64): Ստեղծել է մարդու հիվանդությունների բնական օջախայնության վերաբերյալ ուսմունք, որը նպաստել է մակաբուծաբանության մեջ էկոլոգ. ուղղության զարգացմանը: Հետազոտել է հելմինթների զարգացման շրջափուլերը և մի շարք հելմինթոզների ախտածնությունը, թռչող արյունածուծ

միջատների ֆաունան: Պ–ու աշխ–ները նպաստել են մի շարք հիվանդությունների կանխարգելմանը: Տզաբանության խոշոր–ագույն մասնագետներից է: ԽՍՀՄ Պետ. (1941, 1950), Լենինյան (1965) մրց–ներ:

ՊԱՎԼՈՎՄԿԻ Իվան Գրիգորևիչ (1909–1999), խորհրդ. զորապետ, բանակի գեն. (1967): ԽՄ հերոս (1969): ՀՄՊ–ի ժամանակ՝ հրաձգ. դիվիզիայի հրամ.: 1961–ից՝ մի շարք ԶՕ–ների զորքերի հրամ.: 1967–80–ին՝ Ցամաք. զորքերի գլխ. հրամ. և ԽՍՀՄ պաշտպ–յան նախարարի տեղակալ:

ՊԱՎՍԱՆԻՈՍ (Pausanias), II դ–ի հույն գրող: Հեղինակ է «Հելլադայի նկարագրություն» երկի, որտեղ ներկայացված են Հունաստանի ճարտ. հուշարձաններն ու մշակույթը. այն ունի ուղեցույցի նշանակություն:

ՊԱՎՍԿԻ Գերասիմ Պետրովիչ (1787–1863), բանասեր–արևելագետ (երրայագետ, թյուրքագետ), ռուսագետ: Ավագ քհն.: Ռուս պատմաաստվածաշնչ. դպրոցի հիմնադիրը: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1858): Ռուս է թարգմանել Աստվածաշնչի որոշ գրքեր (հրտ.՝ 1818, 1861–64): Հեղինակ է «Ռուսաց լեզվի կառուցվածքի բանասիրական ուսումնասիրություններ» (1841–42) աշխ–յան, «Հրեերենի համառոտ քերականություն…» (1818) դասագրքի:

ՊԱՏԱԳՈՆԻԱ (Patagonia), բնամարզ Հվ. Ամերիկայի հվ–արլ–ում՝ Արգենտինայում: Ռելիեֆում գերազանցում են աստիճանաձև սարավանդները, որոնք արմ–ում ունեն մինչև 2200 *մ* բարձր.: Արդյունահանում են նավթ և գազ:

ՊԱՏԱԳՈՆՅԱՆ ԱՆԴԵՐ (Andes Patagonicos), Անդերի հվ. մասը Չիլիում և Արգենտինայում՝ հվ. լայն–յան 39º–ից հվ: Բարձր.՝ մինչև 4058 *մ* (Սան Վալենտին լ.): Կան սառցադաշտեր, հս–ում՝ հրաբուխներ: Ծածկված է մշտադալար և խառնանտառներով:

ՊԱՏԱՀՈՒԹՅՈՒՆ (հավանականության տեսություն), որևէ երևույթ, որը կարող է տեղի ունենալ պատահական ելքով (օր.՝ մետաղադրամի «գիրը» և «արծիվը», որևէ թվի հայտնվելը զառը նետելիս ևն): Նման փորձի ամենապարզ արդյունքը կոչվում է տարրական Պ.:

ՊԱՏԱՀՈՒԹԻ ՀՈՐԻԶՈՆ, *ևս խոռոչի* այն սահմանը, որից դուրս որևէ օբյեկտ կամ ճառագայթում անցնել չի կարող: Հետևաբար արտաքին դիտորդները չեն կարող որևէ տեղեկություն ստանալ նրա ներսում կատարվող այս կամ այն երևույթի մասին: Պ. հ–ի շառավիղը կոչվում է Շվարցշիլդի շառավիղ:

ՊԱՏԱՆԴ, անձ, որին վերցնող կողմն առևանգում և պահում է, որպեսզի որևէ պետության, կազմ–յան կամ անհատների ստիպի կատարելու որոշակի պահանջներ կամ պարտավորություններ: Պատերազմի ժամանակ Պ. են համարվում պատերազմող կողմերից մեկի խաղաղ բնակիչները կամ զինվորականները: Պ–առությունը և նրանց սպանությունն արգելված է ժամանակակից միջազգ. իրավունքով:

«ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ», հոգևոր, պատմ., գր., մշակութ. մանկապատանեկան պարբերաթերթ (1936–ից, Բեյրութ): Հայ ավետարան. քրիստ. Ձանից միության հրտ–յուն: Խմբ–ներ՝ Սանասե Շնորհոքյան, Լևոն Սիմոնյան, Պարգև Տարագչյան, Ժանեթ Քասունի, Փոլ Ներսեսյան, Արամ Սարգիսյան, Տիգրան Յումուշաքյան, Երվանդ Քասունի (1993–ից):

«ՊԱՏԱՆԻ», պատկերազարդ ամսագիր: Լոնդոնի հայ երիտասարդ. միության հրտ–յուն (1902–07, Լոնդոն): Խմբ.՝ Կարապետ Թումայան:

«ՊԱՏԱՆԻ», գր–գեղ. եռամսյա ալմանախ (1910–15, Թիֆլիս): Խմբ–հրտ–ներ՝ Միսաք Էփրիկյան, Նշան Մկրտչյան:

ՊԱՏԱՆՋԱԼԻ, մ. թ. ա. II դ–ի հնդիկ լեզվաբան: *Պանինիի* երևելի հետևորդը և նրա գործերի մեկնիչը: Հիմն. աշխ–ը «Մահաբհաշյա»–ն է (լեզվաբ. մեկնաբանություններ): Երբեմն (հատկապես՝ Հնդկաստանում) նույնացվում է փիլ. *Պատանջալիի* հետ:

ՊԱՏԱՆՋԱԼԻ, հնդիկ փիլ.: Յոգայի դպրոցի հիմն. տեքստի՝ «Յոգա սուտրա»–ների (II–IV դդ.) ենթադրյալ հեղինակը:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, բարոյագիտ–յան կատեգորիա. բնութագրում է հաս–յան նկատմամբ անձի վերաբերմունքը՝ անձին ներկայացվող հաս–յան որոշակի բարոյական պահանջներն իրականացնելու առումով: Ի տարբերություն պարտքի, որը վերաբերում է բարոյական պահանջները գիտակցելուն, Պ. կապված է դրանց իրագործման հետ:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ, քաղաքացու կամ իրավաբ. անձի պատասխանատվությունը քաղիրավ. պարտավորությունները խախտելու համար: Լինում է գույք. (օր.՝ գույքի հարկադիր վերցնելը, դրամ բռնագանձելը) և ոչ գույք. (օր.՝ պահանջվում է հերքել քաղաքացու կամ կազմ–յան պատիվն ու արժանապատվությունն արատավորող ոչ ճիշտ տեղեկությունները):

ՊԱՏԱՏՈՒԿ (Convolvulus), պատատուկազգիների ընտանիքի բազմամյա, հազվադեպ՝ միամյա խոտաբույսերի, թփերի, կիսաթփերի ցեղ: Հայտնի է 250 տեսակ (բարեխառն գոտում), ՀՀ–ում՝ 6՝ գրեթե բոլոր մարզերում: Կալվերտի Պ. և փոփոխ. Պ. գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

ՊԱՏԱՏՈՒԿԱԶԳԻՆԵՐ, երկշաքիլ բույսերի ընտանիքի խոտաբույսեր, թփեր, կիսաթփեր: Հայտնի է 55 ցեղ՝ 1600 տեսակ, մերձարևադարձ. և արևադարձ. գոտիներում: Տատ. առավել նշանակություն ունեն այգածաղիկը (օգտագործվում է աննդի մեջ), դեղաբույս յալապան (գիշեր. գեղեցկուհի) ևն:

ՊԱՏԱՐԱԳ (պիլ. և զենդ. – նվեր, ընծա), 1. քրիստոնեության գլխ. *ժամերգությունը*: Ծագել է մինչքրիստ. *ծեսերից*: Պ. մարդկության մեղքերի քավության համար Հիսուս Քրիստոսի խաչելությամբ զոհաբերվելու, պատարագվելու խորհուրդն է, որը կատարվում է կրոն. բնագրերի ընթերցումներով, արտասանությամբ, աղոթքներով, երգեցողությամբ, երաժշտությամբ, խնկարկումով և ծիս. այլ արարողություններով: Պ–ի ժամանակ հավատացյալները ճաշակում են Քրիստոսի մարմինն ու արյունը խորհրդանշող հաց (նշխար) ու գինի: Ավանդության համաձայն՝ Պ–ի առաջին կազմողը եղել է Հակոբ Տյառնեղբայր առաքյալը (Երուսաղեմի 1–ին եպս–ը):

Հայերը Պ. մատուցել են մ. թ. I դ–ից: Ըստ ավանդության՝ հայոց 1–ին *Պատարագատուփը* Կեսարիայից բերել է Գրիգոր Լուսավորիչը: 2. Երաժշտ. երկ, հայ մասնագիտացված մոնոդիկ երգարվ–ի հնագույն ժանրերից (արտասանվող ու երգվող հատվածներով եկեղեցածիս. ստեղծագործություն): Վերախմբագրել է Ներսես Շնորհալին՝ 4 գլխ. եղանակների շուրջ («Սուրբ Աստված», «Սուրբ–սուրբ», «Հայր մեր» և «Միայն սուրբ»): Պ–ի երգերը վերստին գրառել են Ն. *Թաշճյանը* (*նոր հայկական ձայնագրությամբ*, մասնակցել է Սակար *Եկմալյանը*, հրտ.՝ 1874, 1878): Ընդունված են Մ. Եկմալյանի (հրտ.՝ 1896, Լայպցիգ–Վիեննա) և Կոմիտասի (հրտ.՝ 1933, Փարիզ) բազմաձայն Պ–ները, որտեղ օգտագործված են Ն. Թաշճյանի գրառած եղանակները (սաղմոներգային–վանկաչափ., ծորուն–զարդարուն, խոհ., հանդիսավոր), նաև Էջմիածնում պահպանված հատվածներ:

ՊԱՏԱՐԱԳԱՏԵՏՐ, Պատարագամատոյց, Խորհրդատետր, պատարագի արարողության ծիսամատյան: Բովանդակում է աղոթքներ, հոգևոր երգեր, մաղթանքներ, քարոզներ, հատվածներ Աստվածաշնչից: Առաջին Պ. վերագրվել է առաքյալներին, մասնավորապես՝ Հակոբ Տյառնեղբորը: Առաջին անգամ խմբագրել է *Բարսեղ Կեսարացին*, որի համառոտ թարգմ–յունը (V դ.) Հայ եկեղեցում գործածվել է V–VI դդ–ում: Ընդարձակ Պ. թարգմանվել է XI դ–ում: Հայոց Պ. գլխավորապես կազմված է *Բարսեղ Կեսարացու* և *Գրիգոր Նազիանզացու* հեղինակած Պատարագամատույցից: Հայ. առաջին տպագիր Պ. հրատարակել է *Հակոբ Մեղապարտը* 1513–ին Վենետիկում:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ, իշխանության ներկայացուցչ. մարմնում ընտրված անդամ: 2017–ին ընտրված ՀՀ խորհրդարանն ունի 105 Պ. (մինչ այդ՝ 131):

ՊԱՏԵՐԱԶՄ, պետությունների (պետությունների խմբավորման), ժողդ–նեբի, սոցիալ., ազգ. կամ կրոն. խմբերի սոցիալ–քաղ. հակամարտություններ, որոնք լուծվում են ԶՈՒ–ի միջոցով: Պ–ում նախանշված քաղ. նպատակին հասնելու համար կիրառվում են նաև տնտ., դիվանագիտ., տեղեկատվ–հոգեբ. և պայքարի այլ ձևեր: Պ. իր մասշտաբներով սոցիալ–քաղ. այլ երևույթներից (զինվ. բախում, զինվ. ապստամբություն) տարբերվում է հակամարտող կողմերի ԶՈՒ–ի միջև ռազմ. գործողությունների ծավալով: Տես նաև *Առաջին համաշխարհային պատերազմ*, *Երկրորդ համաշխարհային պատերազմ*:

«ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԵՏԱՐԱՆ», ձեռագիր մատյան (պատվիրատու՝ *Ստեփանոս Օրբելյան*, գրիչ՝ Հովհաննես Օրբելյան, ծաղկող՝ *Մոմիկ*, Մտնդ., ձեռ. № 6792): Պատկերազարդել է 1302–ին Ամաղուի Նորավանքում: 1925–ին Երնջակի Սբ Կարապետ վանքից բերվել է Մայր աթոռ: Ունի 12 տերուն. պատկերներ, անվանաթերթեր, լուսանցազարդեր և զարդագրեր:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՆՔՆԵՐ ԵՎ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, *պատերազմ* վարելու միջազգ. կարգ, որը սահմանվում է պատերազմ մղելու առավել դաժան միջոցներն արգելելու, քաղաքաց. բնակչության պաշտպ–յունն ապահովելու նպատակով: Պ. օ. և ս. կարգավորում են նաև պատերազմող կողմերի հարաբերությունների, պատերազմի զոհերի (վիրավորներ, հիվանդներ ևն), քաղաքացիների իրավ. դրությունը, չեզոք պետությունների իրավունքներն ու պարտականությունները ևն: Սահմանվել են միջազգ. բազմակողմ

համաձայնագրերով կամ ձևավորվել որպես սովորույթ: Պ. օ. և ս. սահմանող առավել կարևոր համաձայնագրերից են *Հաագայի համաձայնագրերը* (1899, 1907), *Ժնևի արձանագրությունը*, *Ժնևի համաձայնագրերը* (1949), զինված հակամարտության դեպքում՝ մշակութ. արժեքները պահպանելու մասին Հաագայի 1954-ի համաձայնագիրը ևն: Ղարաբաղյան պատերազմի ընթացքում Ադրբեջանը բազմիցս խախտել է Պ. օ. և ս.: Ադրբ. զինված կազմավորումները, քաղ. և ռազմ. ղեկավարության թույլտվությամբ ու աջակցությամբ, ոմբակոծել և հրետակոծել են ԼՂՀ խաղաղ բնակավայրերը, կոտորել խաղաղ բնակչությանը, այդ թվում՝ հակամարտության սահմաններից դուրս (տես *Բաքվի ջարդեր 1990*, *Մումգայիթի ցեղասպանություն*): 2016-ի ապրիլյան պատերազմի ժամանակ ևս ադրբ. ուժերը կոպտորեն խախտել են Պ. օ. և ս-ները, Արցախի Թալիշ գ-ում խոշտանգել են քաղաքաց. անձանց, խոշտանգելով սպանել են գերի ընկած զինվորականների:

ՊԱՏԵՐՍՈՆ (Paterson), ք. ԱՄՆ-ի հս-արլ-ում՝ Նյու Ջերսի նահգ-ում: Նյու Յորքի արվարձանն է: Բն.՝ 145 հզ. (2010):

ՊԱՏԻԱԼԱ, ք. Հնդկաստանի Փենջաբի նահգ-ում, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 445,2 հզ. (2011):

ՊԱՏԻԺ (քր. իրավունք), պետ. հարկադրանքի հատուկ միջոց. հանցանքի համար պետության անունից կիրառում է դատարանը:

ՊԱՏԻՃ, 1. **կապսուլա** (լատ.՝ capsula – տուփիկ, պատենիկ), սահմանված դեղաչափով դեղաձև. օսլայե (ժելատինե ևն) թաղանթում ամփոփված փոշի կամ հեղուկ դեղանյութ՝ ներքին ընդունման համար: 2. **Պատյան**, բույսի պտուղ, որը բացվում է 2 ընկնող փեղկերով, որից հետո մնում է միջնորմը՝ սերմերով: Բնորոշ է կաղամբազգիներին (կաղամբ, մանանեխ):

ՊԱՏԻՃԱԽՅԻԿ, 1. տիեզ. սարքի իջեցվող հատվածը, որը նախատեսված է օգտ. բեռը երկն. մարմինների մակերևույթին իջեցնելու համար: 2. Ինքնաթիռից հերմետիկորեն անջատվող հատվածամաս, որով վթարի դեպքում ինքնանետվում (կատապուլտվում) է օդաչուն:

ՊԱՏԻՃԱՎՈՐ ՄԻԿՐՈՕՐԳԱՆԻԶՄՆԵՐ, բակտերիաներ, սնկեր և այլ մանրադիտակ. օրգանիզմներ, որոնց բջիջները շրջապատված են արտաքին ազդեցություններից պաշտպանող լորձային *պատիճով*: Որոշ հիվանդածին Պ. մ. (օր.՝ պնևմոկոկները), կորցնելով պատիճ առաջացնելու հատկությունը, դառնում են ոչ ախտածին:

ՊԱՏԿԱՆՅԱՆ Գաբրիել Սերովբեի (1802–1889), գրող, մանկավարժ, հաս. գործիչ, խմբ.: Քհն. (1827-ից): Սերովբե *Պատկանյանի* որդին, Միքայել *Պատկանյանի* եղբայրը, Ռափայել *Պատկանյանի* հայրը: 1836-ին Նոր Նախիջևանում բացել է մասնավոր վարժարան: 1850–51-ին՝ Թիֆլիսի *«Արարատ»* շաբաթաթերթի խմբ.: Հեղինակ է «Համառօտ վարդապետութիւն ուղղափառութեան» (1821), «Հայոց ազգի պատմութիւնը» (1863), «Միջնավէպ հայոց ազգի պատմութենէն…» (1864), «Նոր Նախիջևանի պատմութիւնը» (1917) և այլ աշխ-ների, «Շաւարշ Երկրորդ կամ Նորոգեալ Հայաստան» (1864), «Հոիփսիմէ կամ Փրկութիւն Հայաստանի» (1875), «Զաւան եւ Փառնակ Ա» (1877) և այլ գեղ. երկերի, նաև դասագրքերի, բառարանների, տոմարագիտ., կրոն. երկերի: Կատարել է թարգմ-յուններ:

ՊԱՏԿԱՆՅԱՆ Միքայել Սերովբեի (1814–1895), դրամատուրգ, խմբ., թարգմանիչ: Սերովբե *Պատկանյանի* որդին, Գաբրիել *Պատկանյանի* եղբայրը: Հեղինակ է «Պարգև մանկանց» (1851) դասագրքի, «Միջի մարդ կամ Մեցիքուլ» (հրտ.՝ 1859) կատակերգության, «Կրիտիք Յակոբայ Կարենեանց հեղինակութեան վրայ» (1861) քննադատ. աշխ-յան: Կատարել է թարգմ-յուններ:

ՊԱՏԿԱՆՅԱՆ Ռափայել Գաբրիելի, **Գամառ Քաթիպա** (1830–1892), բանաստեղծ, արձակագիր, հրտ., խմբ.: Գաբրիել *Պատկանյանի* որդին: 1852-ին Մոսկվայում Գևորգ Քանանյանի և Մնացական Թիմուրյանի հետ հիմնադրել է «Գամառ-Քաթիպա» գր. ընկ-ը (հետագայում Պ. այդ անունը դարձրել է իր գր. կեղծանունը): 1859-ին Ս. Պետերբուրգում Պ. հիմնադրել է տպարան (տպագրել է շուրջ 35 անուն գիրք): 1863–64-ին՝ *«Հիւսիս»* շաբաթաթերթի խմբ-հրտ.: Պ. հայ քաղաքաց. պոեզիայի հիմնադիրներից է («Արաքսի արտասուքը», «Քաջ Վարդան Մամիկոնեանի մահը», երկուսն էլ՝ 1856): Հեղինակ է «Արձակ եւ չափաբերական աշխատութիւնները» (պր. 1–4, 1856–57) ժող-ի, «Բանաստեղծութիւնք» (1864), «Ազատ երգեր» (1878), «Նոր Նախիջևանի քնար» (1879), «Մանկական երգեր» (1880) բանաստեղծությունների, «Ընտիր երկասիրութիւններ» (հ. 1–2, 1893, հ. 3, 1904) ժող-ների, «Նապոլէոն Բոնապարտ» (1857–62), «Ժողովածոյք օտարազգի բառերիս Նոր Նախիջևանցոց…» (1870) աշխ-ների, «Փառասէր», «Ես նշանած էի», «Տիկին եւ նաժիշտ» (1884) վիպակների, «Չախու», «Պաց ազպար», «Տիրացինս» և այլ պատմվածքների, նաև դասագրքերի: Կատարել է թարգմ-յուններ:

ՊԱՏԿԱՆՅԱՆ Սերովբե Պետրոսի (1769–1836), մանկավարժ, բանաստեղծ: Միքայել *Ռեպտենի* եղբայրը, Գաբրիել և Միքայել *Պատկանյանների* հայրը: Դպրոցներ է հիմնադրել Կ. Պոլսում (1792, երաժշտ.), Թիֆլիսում (1793, առաջին հայկ., գործել է մինչև 1805-ը), Նոր Նախիջևանում: Հեղինակ է «Համառօտ պատմութիւն աւերեցման Փայտակարան մայրաքաղաքի…» (հրտ.՝ 1910) պատմ. ուսումնասիրության, նաև «Երգք» (1857) ժող-ի:

ՊԱՏԿԱՆՅԱՆ (Պատկանով) Քերովբե Պետրոսի (1833–1889), աղբյուրագետ, մատենագետ, բանասեր, պատմաբան: Բանասիր. գիտ. դ-ր (1864): Ս. Պետերբուրգի համալսարանի պրոֆ. (1871): ՌԳԱ թղթ. անդամ (1885): Գրել է ռուս.: 1861-ից գլխավորել է Ս. Պետերբուրգի համալսարանի արլ. լեզուների ամբիոնը, ձևավորել հայագիտ-յան պետերբուրգյան դպրոցը: Պ. ուսումնասիրել, ռուս. թարգմանել և հրատարակել է հայ պատմիչների, ժամանակագիրների աշխ-ները: Հեղինակ է «Սասանյան արքայատոհմ պատմության փորձ ըստ հայ պատմիչների հաղորդած տեղեկությունների» (1863), «Մի քանի խոսք հին հայկական ամսանունների մասին» (1871), «Վանի արձանագրությունները և դրանց նշանակությունը Առաջավոր Ասիայի պատմության համար» (1881), «Ռուսաստանի սահմաններում հայտնաբերված Վանի համակարգի սեպաձև արձանագրությունների մասին» (1882–83), «Հետազոտություն հայոց լեզվի բարբառների մասին» (1869), «Հայոց լեզվի զբաղեցրած տեղը հնդեվրոպական լեզուների շրջանում» (1879) և այլ աշխ-ների, կազմել է «Յուցակ հայ գրականության. IV դ–ից մինչև XVII դ–ի կեսը» (ֆրանս., 1860):

ՊԱՏԿԱՌՈՒԿ (Mimosa), **միմոզա ամոթխած**, բակլազգիների ընտանիքի ծառեր, թփուտներ, լիաններ, խոտաբույսեր: Հայտնի է 500 տեսակ՝ հիմնականում Ամերիկայի արևադարձներում և մերձարևադարձներում: Որպես մոլախոտ՝ լայնորեն տարածված է ամոթխած Պ., որի տերևները հպումից, հարվածից, մութն ընկնելիս միակցվում են, կախ ընկնում: Պ. է կոչվում նաև արծաթավուն ակացիան, որն աճեցնում են Սև ծովի կովկաս. ափերին:

«ՊԱՏԿԵՐ», կրոն., գիտ., գր-բանասիր. կիսամսյա հանդես (1890–99, Կ. Պոլիս): Կ. Պոլսի հայ կաթոլիկների պատրիարքարանի հրտ-յուն: Արտոնատեր՝ Հովսեփ Շեհրյան, խմբ.՝ Ե. Նազարեթյան:

«ՊԱՏԿԵՐ», կինոարվ-ին նվիրված հայ. առաջին պարբ-ը (1927, Կ. Պոլիս): Խմբ.՝ Բագարատ Թևյան: 9-րդ համարից միացել է «Անուշապուր» (Կ. Պոլիս, 1926–27) շաբաթաթերթին և, պահպանելով համարակալումը, տպագրվել «Անուշապուր-Պատկեր» վերնագրով (1927–28):

«ՊԱՏԿԵՐ», գր., երգիծ., գեղ. պարբերաթերթ (1931–45, Ստամբուլ): Խմբ-ներ՝ Ժիրայր Վարժապետյան, Ավետիս Ալիքսանյան: 1944–45-ին հրատարակվել է որպես ստամբուլահայ նոր գրողների հանդես:

ՊԱՏԿԵՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, **իկոնոլոգիա** (< հուն. eikon – պատկեր, կերպար և *...լոգիա*), ուղղություն XX դ–ի արվեստագիտ-յան մեջ. ուսումնասիրում է գեղ. ստեղծագործության թեմաներն ու պատկերման մոտիվները՝ նրա պատմամշակութ. իմաստը և աշխարհայացքը որոշելու համար:

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴՈՒՄ, **նկարազարդում**, կերպարվ-ի բնագավառ, որը պատկերների միջոցով մեկնաբանում, ձևավորում, առավել ընկալելի է դարձնում ամսագրի, լրագրի, հանդեսի, ձեռագիր կամ տպագրված գրքի բովանդակությունը, տեքստը: Ձեռագիր մատյանները պատկերազարդվել են մանրանկարներով (տես *Մանրանկարչություն*):

ՊԱՏԿԵՐԱԿԱԼ, **սրբապատկերակալ**, ուղղափառ եկեղեցում ինտերիերի հիմն. մասը բեմից առանձնացնող սրբապատկերներով միջնորմ (դուռ): Պ–ի զարգացած տեսակը հայտնի է XIV դ–ի վերջ–XV դ–ի սկզբից (Մոսկվայի Կրեմլի Ավետման տաճարի Պ.՝ Թեոֆանես Հույնի, Անդրեյ Ռուբլյովի, Պրոխոր Գորոդեցկու սրբապատկերներով):

ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ, կրոն. քողի տակ Բյուզ. կայսրությունում 726–842-ին ծավալված հաս-քաղ., գաղ. շարժում: Գլխավորել է պետությունը՝ ջանալով սահմանափակել եկեղեցու քաղ. դերը: Սակայն 842/843-ին հայազգի կայսրուհի Թեոդորան (842–856) վերականգնել է սրբապատկերների պաշտամունքը:

Պ. VI–VII դդ–ում տարածվել է նաև Հայաստանում: Պատկերամարտ էին տարբեր աղանդավոր. շարժումները, նախ և առաջ՝ Պավլիկյան ու Թոնդրակյան շարժումները: Հայաստանում եկեղեցին սրբապատկերների նկատմամբ երբեք բացաս. վերաբերմունք չի ունեցել, բայց

այդ պաշտամունքը երբևէ չի հասցրել բյուզ. եկեղեցում տեղ գտած ծայրահեղություններին:


ՊԱՏԿԵՐԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, սրբապատկերների գերբնական կամ աստվածային զորության վերաբերյալ պաշտամունքը: Հիմնավորել են Եղեսիայի Աբգար թագավորին Քրիստոսի ուղարկած վարշամակի մասին ավանդությամբ, համաձայն որի՝ նրա վրա եղել է Քրիստոսի անձեռագործ պատկերը: Հայաստանի եկեղեցիներում պատկերագրությունը տարածվել է VI–VII դդ.–ից: Պ. պաշտպանել են Հովհան Օձնեցին, Հովհան Սայրագոմեցին, Մխիթար Այրիվանեցին, իսկ առավել հանգամանորեն՝ Վրթանես Քերթողը:

ՊԱՏԿԵՐԱՄԱՀ, գեղ. թանգարան: Հավաքում, ուսումնասիրում, վերականգնում և ցուցադրում է գեղանկարչ., քանդ., գրաֆիկ. և դեկորատիվ–կիրառ. արվ–ի ստեղծագործություններ: Պ–ներն ստեղծվել են մասնավոր, պալատ. և այլ հավաքածուներից, հիմնականում՝ նշանավոր ճարտ. հուշարձաններում (Պիտտի պալացոն՝ Ֆլորենցիայում, Էրմիտաժը՝ Ս. Պետերբուրգում, ՀԱՊ–ը՝ Երևանում):

ՊԱՏԿԵՐԱՑԱՆԻ, **ռաստր** (գերմ.՝ Raster), միատեսակ տարրերից (ոսպնյակներ, անցքեր, պրիզմաներ ևն) կազմված ցանց՝ ուղղորդված լուս. փնջի կառուցվածք. ձևափոխման համար: Պոլիգրաֆիայի, հեռուստատեսության, լուսանկարչության, ֆիզ. սարքերի օպտիկ. համակարգերի հիմն. բաղադրիչն է: 1. Կիսատոն. տպագր. բնագրերի վերարտադր–յան ժամանակ օգտագործվում է մանրակերտային պատկեր ստանալու համար: 2. Հեռուստատեսությունում՝ էկրանի վրա պատկերը կազմող տողերը: Տես *Հեռուստարտևային պատկերացանց*.



Հարթ և հարթ տպագրության պատկերացանցի սխեմա



Խորը տպագրության պատկերացանցի սխեմա

ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄ (տեխ.), գիտատեխ. ուղղություն, որն զբաղվում է որևէ օբյեկտի (առարկա, գործընթաց, երևույթ, իրավիճակ, ազդանշան)՝ նախապես առանձնացված օբյեկտների որևէ դասի պատկանելության հաստատման մեթոդների մշակման և համակարգի (այդ թվում՝ համակարգչ.) կառուցման հարցերով: Պ. ճ–ման մեթոդներն օգտագործվում են տեխ. արատորոշման, քրեագիտ–յան և այլ ոլորտներում:

«ՊԱՏԿԵՐՈՒՄՈՒՅՑ ԳԻՐՔ», մանրանկարչ. արվ–ի հայկ. ուս. ձեռնարկ միջնադարում: Վաղնդ *Ալիշանը* ՎատՄՄ–ի № 14.34 ձեռագիրը պայմանականորեն անվանել է «Պ. գ.» և 1896–ին հրատարակել «Բազմավեպում»: Պարունակում է XIII–XV դդ–ի հայկ. տարբեր դպրոցների մանրանկարների օրինակներ: Միջնադար. Հայաստանում եղել են «Պ. գ.»–ի նման ուսուցող. բազմաթիվ ձեռագրեր [Մտնդ–ի 1682–85–ի Ավետարանի (ձեռ. № 3833) ուս. օրինակները ևն]:

«ՊԱՏԿՈՄ», մանկապատանեկան ամսագիր (1923–24, Երևան): ՀԽՍՀ պատանի կոմունիստների կազմ–յան կենտր. խորհրդի պաշտոնաթերթ: Խմբ.՝ Տիգրան Մուշեղյան:

ՊԱՏՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔ, հաստատում է ֆիզ. երևույթների միմյանց վրա ազդելու թույլատրելի սահմանները: Բացառում է տվյալ պատահույթի ազդեցությունը նրա բոլոր նախորդների վրա, ինչպես նաև բոլոր այն պատահույթների փոխազդեցությունը, որոնց տարած. հեռ–յունը այնքան մեծ է, ժամանակամիջոցը՝ այնքան փոքր, որ նրանք չեն կարող միմյանց կապվել լուս. (կամ այլ) ազդանշանով:

ՊԱՏՃԵՆԱՀԱՆՈՒՄ, փաստաթղթերի, նկարազարդումների, գործողության ենթի պատճենների պատրաստման եղանակ, երբ պատկերը բնօրինակից փոխանցվում է այլ կրիչի վրա: Կատարվում է Պ–ման մեքենաներով, համակարգչ., աուդիո– և տեսատեղեկույթի բազմացման սարքերով և այլ միջոցներով: 1. **Պոլիգրաֆիա–յում**, լուսաճնից տեքստի կամ պատկերի փոխանցումը ձևանյութի լուսազգայուն շերտով պատած մակերևույթին՝ տպաձև պատրաստելու համար: 2.**Մեքենաշինության մեջ**, տրված դետալի՝ ձևանմուշով կամ գծագրով ստացումը՝ հաստոց. մշակման եղանակով: 3. **3D–տեսածրում**, Պ–ման նոր այլընտրանք. եղանակ է, որով բնագրի եռաչափ լուսածրմամբ ստեղծվում է գծագրի համակարգչ. մոդելը, որը նվզգն մշակումից և խմբագրումից հետո պատրաստ է հետագա օգտագործման:

«ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ», ՀՀ ԳԱԱ հայագիտ. եռամսյա/քառամսյա հանդես (1958–ից, Երևան, հոդվածները՝ հայ., ռուս., անգլ.): Հիմնադիր–խմբ.՝ Մկրտիչ Ներսիսյան, խմբ–ներ՝ Վարդգես Միքայելյան, Սարգիս Հարությունյան (2006–ից), պատ. խմբ.՝ Անուշավան Զաքարյան:

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գիտ–յուն պատմ. աղբյուրների, անցյալին վերաբերող փաստերի ու իրողությունների մասին, որոնցով հնարավոր է հավաստել պատմ. գործընթացը, նկարագրված փաստերի անաչառությունը և եզրահանգումներ անել դրանց պատճառների մասին: Պ–յան առանձին բաժիններ են *աղբյուրագիտությունը*, *հնագրությունը*, *հնագրագիտությունը*, *դիվանագիտությունը*, *ժամանակագրությունը*, *դրամագիտությունը* ևն: Պ–յան անխզելի մաս են կազմում նաև հատուկ պատմ. գիտ–յունները՝ *հնագիտությունը*, *ազգագրությունը* և *պատմական աշխարհագրությունը*:

ՊԱՏՄԱԳՐՅԱՆ Աշոտ (1898–1982), խմբավար, մանկավարժ, կոմպոզիտոր, երաժշտագետ: Պատվ. դ–ր (1954), պրոֆ.: *«Գուսան»* երգչախմբի հիմնադիրը (1926, Փարիզ): Գրել է մեներգեր, խմբերգեր, ռոմանսներ, դաշնամուր. սյուիտ, «Հայկական օրատորիա», մանկ. օպերետներ, մշակել հայկ. ժող. երգեր, կազմել և հրատարակել է «Գանձարան հայ երգերու» 7 պրակները (1938–ից), «Հայ երգը դարերի միջից» (1973) երաժշտագիտ. հանրագիտարանը: «Էլմի» (1943, Իրան) և Սբ «Ներսես Շնորհալի» (1958, Մայր աթոռ Սբ Էջմիածին) շքանշաններ, ՀԲԸՄ մրց. (1945):

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ, *պատմագիտության* պատմությունը, ինչպես նաև որոշակի թեմայի կամ պատմ. դարաշրջանի վերաբերող պատմագիտ. հետազոտությունների ամբողջությունը: Հայ Պ. ստեղծվել է V դ–ում՝ Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Կորյունի, Եղիշեի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու երկերով:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գիտ–յան ճյուղ. ուսումնասիրում է որևէ երկրի կամ տարածքի ֆիզ., տնտ., քաղ. և բնակչության աշխարհագրությունը՝ ըստ դրանց պատմ. զարգացման ժամանակաշրջանների: Հարում է աշխարհագր. և պատմ. գիտ–յուններին: Հայկ. Պ. ա–յան ակունքներն սկզբնավորվել են V դ–ից, սակայն, որպես գիտաճյուղ ձևավորվել է XVIII–XIX դդ–ում՝ Ղուկաս *Ինճիճյանի*, Ղևոնդ *Ալիշանի* և ուր. աշխ–ներով:

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ուսումնասիրում է երկրագնդի պատմությունը և նրա երկրը. զարգացման օրինաչափությունները: Հիմն. խնդիրներն են՝ երկրակեղևի զարգացման փուլերի, ամբողջությամբ երկրագնդի և նրա օրգ. աշխարհի առանձնացումն ու դասակարգումը, երկրակեղևի ներքին կառուցվածքի վերափոխումների և դրանց հետ կապված ներքին շարժընթացների պարզաբանումը: Որպես գիտ–յուն՝ ծագել է XVIII–XIX դդ–ի սահմանագծին (Ու. Սմիտ, Ժ. Կյուվե, Ա. Բրոնյար, Չ. Լայնել, Է. Զյոս և ուր.):

ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՆՐ, կերպարվ–ի հիմն. ժանրերից. պատկերում է պատմ. իրադարձություններ, գործիչներ, երևույթներ: Սկզբնավորվել է Եվրոպայում Վերածննդի ժամանակաշրջանում, արմատավորվել XVIII–XIX դդ–ում: Հայկ. արվ–ում Պ. ժ–ի հիմնադիրը Վարդգես *Սուրենյանցն* է («Ոտնահարված սրբություն», 1895, «Շամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ», 1899, ևն): Պատմ. թեմաներով նկարներ են ստեղծել նաև Հ. Շամճինյանը, Ե. Թադևոսյանը, Դ. Օքրոյանցը, Հ. Կոջոյանը, Ե. Քոչարը, Է. Իսաբեկյանը, Գ. Խանջյանը, Զ. Գրիգորյանը և ուր.:

ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ, հիմնադրվել է 1964–ին Երևանում: Նպատակը հայկ. ճարտ. հուշարձանների պահպանումն է, վերականգնումն ու հանրայնացումը: Ընկ–յան միջոցներով վերականգնվել են Գնդեվանքը (X դ.), Բջնիի Սբ Սարգիս (VII դ.), Եղեգիսի Զորաց (XIII–XIV դդ.), Դաշտադեմի (VII դ.), Կապուտանի (XIV դ.) և այլ եկեղեցիներ, հրատարակվել են «Էջմիածին», «Նախիջևանի ճարտարապետական հուշարձանները», «Լեռնային Ղարաբաղի պատմա–ճարտարապետական հուշարձանները» և այլ գրքեր, քարտեզ–ուղեցույցներ: Նախագահներ՝ Մարտիրոս Սարյան, Վարազդատ Հարությունյան, Միքայել Հարությունյան (2008–ից):

ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ, **պատմության մատերիալիստական ըմբռնումը**, *մարքսիզմի* բաղկացուցիչ մաս, ուսմունք հաս–յան և պատմության մասին. առաջադրել են Կ. *Մարքսը* և Ֆ. *Էնգելսը*, ամբողջացրել՝ Վ. Ի. *Լենինը*: Հիմքում դրված է հաս–յան նյութ. կյանքի՝ հաս. գիտակցության նկատմամբ հաս. կենցաղի առաջնությունը, այն գաղափարը, որ մարդիկ իրենք են կերտում իրենց պատմությունը: Իսկ պատմությունը դիտարկում է որպես զարգացման օրինաչափ բնապատմ. հասարակարգի հերթափոխության գործընթաց: 1920–30–ական թթ–ին Պ. մ. դարձել է դոգմա և կոմկուսի քաղ–յունն իրականացման գործիք:

ՊԱՏՄԱԿԱՆ–ՔԱՐՏԵԶՆԵՐ, արտացոլում են պատմ. երևույթներն ու իրադարձությունները (օր.՝ հին քաղաքակրթություն–

ների, մշակույթների, պետությունների տեղաբաշխումը, ճակատամարտերի վայրերը ևն):

ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, հիստորիզմ, ժամանակի մեջ զարգացող իրականության մասին սկզբունք: Պ. օբյեկտը դիտարկում է որպես համակարգ: Պ-ի ակունքներում Հերակլիտեսի, Պլատոնի, Արիստոտելի ոսմունքներն են, իսկ հաս-յան առնչությամբ այն մշակել են Ջ. Վիկոն, Վոլտերը, Գ. Հեգելը, Կ. Մարքսը, բնագիտ-յան մեջ՝ Չ. Լայելը և Չ. Դարվինը: Ժամանակակից փիլ-յան և գիտ-յան մեջ նույնպես շարունակվում են քննարկումները Պ-յան խնդիրների վերաբերյալ:

ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄԵԹՈԴ, հետազոտության մեթոդ, որը թույլ է տալիս համեմատության միջոցով վերհանել պատմ. իրադարձությունների ու յուրահատուկը, դրանց զարգացման միտումներն ու աստիճանները: Լայնորեն տարածվել է սոցիոլոգիայում, պատմագիտ-յան, լեզվաբ-յան, ազգագրության, իրավագիտ-յան և գրականագիտ-յան մեջ:

ՊԱՏՄԻՉ, պատմագիր, պատմ. երկի հեղինակ հին և միջին դարերում: «Պ.»-ներ են հաս. իրադարձությունների ու դեպքերի նկարագր. շարադրողները՝ ի տարբերություն պատմության գիտ. ուսումնասիրողների՝ պատմաբանների, թեև մի շարք Պ-ներ (Հերոդոտոս, Թուկիդիդես, Մովսես Խորենացի և ուր.) քննադատաբար են օգտագործել գրավոր և բանավոր աղբյուրները: Հայ պատմագիտ-յան նախակարապետը Միքայել *Չամչյանն* է:

ՊԱՏՄՎԱԾՔ, գեղ. գրկ-յան արձակ ժանր, պատմող. բնույթի փոքրածավալ ստեղծագործություն: Պ-ում պատմվում են հերոսի կյանքից մի քանի դրվագներ, քիչ են հերոսները, սահմանափակ՝ դեպքերն ու գործողությունները (Նար-Դոսի «Մեր թաղը» շարքը, Հ. Թումանյանի «Գիքորը», Ա. Բակունցի «Ալպիական մանուշակը», ևն):

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀՀ (2002–ից, 1920–2002-ին՝ կոմիտե, ապա՝ վարչություն), իրագործում է հուշարձանների պետ. հաշվառումը, վավերագրումը, հետազոտումը, նաև նրանց պահպանության, վերականգնման և օգտագործման ոլորտի կառավարումն ու վերահսկողությունը: Ղեկավարել են Ալեքսանդր Թամանյանը, Հովսեփ Օրբելին, Կոնստանդին Հովհաննիսյանը, Գրիգոր Հասրաթյանը, Ալեքսան Կիրակոսյանը, Լավրենտի Բարսեղյանը, Կորյուն Ղաֆադարյանը, Գագիկ Գյուրջյանը, Արմեն Աբրոյանը (2012–ից):

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀՀ ԳԱԱ, հիմնադրվել է 1943-ին՝ *Արմ.ՍՍՀ*-ի պատմության և նյութ. կուլտուրայի ինստ-ի (տնօրեն՝ Մկրտիչ *Ներսիսյան*) հիման վրա: Ունի Հին Հայաստանի, միջին դարերի, նոր շրջանի, խորհրդ. հաս-յան, հայկ. գաղթավայրերի (1959-ից), հայ պարբ. մամուլի ու հաս. մտքի (1965-ից) և հայ-ռուս. հարաբերությունների (1977-ից) բաժիններ: Հետազոտվել են հայ ժողդ-ի ծագման, հայոց հին պետականության, ՀԱԵ ավատատիր. հարաբերությունների ձևավորման ու զարգացման փուլերի, հայ-բյուզ., հայ-արաբ., հայ-իրան., հայ-ռուս. հարաբերությունների, Կիլիկիայի հայկ. պետության, ազգ–ազատագր. շարժումների, հայ հաս. հոսանքների և քաղ. կուս-յունների ու հեղ. շարժումների պատմության, Հայկ. հարցի, Հայոց ցեղասպանության, Արցախի ու Զավախքի և այլ հիմնախնդիրներ, ուսումնասիրվել են Հայաստանի առաջին հանրապետության (1918–20), Խորհրդ. Հայաստանի (1920–90), ԵՀՊ-ին հայ ժողդ-ի մասնակցության և այլ խնդիրներ, ուսումնասիրություններ են կատարվել Հայաստանի պատմ. աշխարհագրության և քարտեզագրության բնագավառներում: Հրատարակվել են «Հայ ժողովրդի պատմություն» (հ. 1–8, 1967–84, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1986), «Հայոց պատմություն» (հ. 1–4՝ 8 գրքով, 2010-ից) բազմահատորյակները, բազմաթիվ արժեքավոր աշխ-ներ հիշյալ հարցերի վերաբերյալ, բուհ. և դպրոց. դասագրքեր, ձեռնարկներ: Տնօրեններ՝ Հովսեփ Օրբելի, Աբգար Հովհաննիսյան, Ս. Երեմյան, Արմո Նարենց, Գալուստ Գալոյան, Հրանտ Ավետիսյան, Աշոտ Մելքոնյան (2002-ից):

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, փիլ-յան բաժին. ուսումնասիրում է պատմության իմաստի, նրա օրինաչափությունների, մարդկության զարգացման և պատմ. իմացության հիմնախնդիրները: «Պ. փ.» առաջինն օգտագործել է Ֆ. *Վոլտերը*, սակայն այդ գիտակարգի արմատները հասնում են միջնադար: Պ. փ-յան ներկայացուցիչները պատմության շարժիչ ուժ են համարել աստված. նախախնամությունը (Օգոստինոս Երանելի), աստված. բանականությունը (Ի. Հերդեր), բացարձակ ոգին (Գ. Հեգել), մարդու անփոփոխ բնույթն ու նրա բնական պայմանները (լուսավորիչներ, Լ. Ֆոյերբախ): Նոր ժամանակների Պ. փ-յան մեջ առաջադրվել են պատմ. շրջապտույտների հայեցակարգերը (Օ. Շպենգլեր, Ա. Թոյնբի, Պ. Սորոկին), պատմության իմաստի քրիստ. հայեցակարգեր (Ն. Բերդյաև, Ժ. Մարիտեն, Ռ. Բուլտման, Ռ. Նիբոտ):

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ», հայագիտ. կիսամյա հանդես (2010–ից, Երևան՝ հայ., ռուս., անգլ., առաջին պր.՝ 2005-ին՝ «Տարեգիրք»): ԵՊՀ հրտ-յուն: Գլխ. խմբ.՝ Էդիկ Մինասյան, պատ. խմբ-ներ՝ Հակոբ Պետրոսյան, Արման Եղիազարյան (2017-ից):

ՊԱՏՅԱՆԱՎՈՐՆԵՐ, տունիկավորներ, ծով. թիկնալարավոր կենդանիների ենթատիպ: Պ-ի շարքն են դասվում ապենդիկուլարիաները, ասցիդիաները, հրամարմինները, սալպերը, տակառիկավորները: Տես նաև *Թրթռուաքորդավորներ*:

ՊԱՏՆԻ, ք. Հնդկաստանի հս-ում, *Բիհար* նահգ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,87 մլն, ագլոմերացիայում՝ 2,8 մլն (2010): Նվիճգստ՝ Գանգեսի ափին: Գղտ-յան առևտրի կենտրոն է: Հիմնադրվել է մ. թ. ա. մոտ V դ-ում: Եղել է Հին աշխարհի խոշորագույն քաղաքներից (տարածքը՝ մոտ 18 *կմ*^{2}), մինչև VI դ. Մագադհա կայսրության և Գուպտերի պետության մայրաքաղաքն էր: Պահպանվել են հնագույն ճարտ. կառույցների, այդ թվում՝ Աշոկի պալատի (մ. թ. ա. III դ.) ավերակները:

ՊԱՏՈՆ Բորիս Եվգենևիչ (ծ. 1918), եռակցման բնագավառի ուկրաինացի գիտնական: ՌԳԱ (1962), Ուկր. ԽՍՀ ԳԱ (1958, նախագահ՝1962-ից) ակադ.: ԽՍՀՄ Սոց. աշխ. (1969, 1978), Ուկրաինայի (1998) հերոս: Ե. Օ. *Պատոնի* որդին: Ուկր. ԽՍՀ ԳԱ էլեկտրաեռակցման ինստ-ի տնօրեն (1953): Պ-ի ղեկավարությամբ ստեղծվել է էլեկտրախարամ. էլեկտրաեռակցումը, կատարվել են հատուկ մետաղագործության ուսումնասիրություններ:

ԽՍՀՄ (1950), Ուկր. (1970, 2004) Պետ., Լենինյան (1957), «Համաշխարհային էներգիա» (2010) մրց-ներ, ԽՍՀՄ ԳԱ Մ. Վ. Լոմոնոսովի անվ. ոսկե մեդալ (1981):

ՊԱՏՈՆ Եվգենի Օսկարովիչ (1870–1953), կամրջաշինության և եռակցման բնագավառի ուկրաինացի գիտնական: Ուկր. ԽՍՀ ԳԱ ակադ. (1929): Սոց. աշխ. հերոս (1943): Բ. Ե. *Պատոնի* հայրը: Էլեկտրաեռակցման ոլորտի հիմնադիր աշխ-ների հեղինակ է: Ուկր. ԽՍՀ ԳԱ էլեկտրաեռակցման ինստ-ի (1945-ից՝ Պ-ի անվ.) հիմնադիր-տնօրենը (1934-ից): Պ-ի ղեկավարությամբ Կիևում՝ Դնեպրի վրա կառուցվել է ամբողջաեռակցված կամուրջ (այժմ՝ Պ-ի անվ.): ԽՍՀՄ Պետ. մրց. (1941):

ՊԱՏՈՐԺԻՆՍԿԻ Իվան Սերգեևիչ (1896–1960), ուկրաինացի երգիչ (բաս): ԽՍՀՄ ժող. արտիստ (1944): 1925-ից՝ Խարկովի, 1935-ից՝ Կիևի ՕԲԹ-ների մեներգիչ (Սուսանին՝ Մ. Ի. Գլինկայի «Իվան Սուսանին», Մեֆիստոֆել՝ Շ. Գունոյի «Ֆաուստ», Դոն Բազիլիո՝ Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1942):

ՊԱՏՎԱՍՏՈՒՄ, մի բույսի (պատվաստացու) բողբոջի կամ կտրոնի տեղափոխումն ու սերտաճեցումը մեկ այլ բույսի (պատվաստակալ) հետ: Կատարվում է բույսերի կամբիումների սերտ միակցումով: Հայտնի են Պ-ման շուրջ 400 ձևեր, որոնցից գործնականում կիրառվում են 10–15-ը:

ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ, կոչում. շնորհվում է այն անձանց, որոնք գործուն մասնակցություն են ունենում տվյալ քաղաքի (երկրի, գյուղի) պաշտպ., ազատագր. մարտերին կամ աչքի են ընկնում տնտ-յան, մշակույթի, գիտ-յան և այլ ոլորտներում իրենց բացառիկ վաստակով: «Պ. ք.» կոչումը ՀՀ-ում շնորհվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐ, ասույթների, խրատների, նորմերի ամբողջություն, որի միջոցով մշակվում են վարքագծի կարծրատիպեր, կարգավորվում հաս. հարաբերություններ: Պ. են նաև եկեղեցու կանոնակարգած կրոնաբարոյական նորմերը: Պ-ի ստեղծումը եկեղեցին վերագրում է Աստծուն և հաստատում մարգարեների և սրբերի միջոցով ժողդ-ին շնորհվելը և զետեղվելը Սուրբ գրքերում (Աստվածաշունչ, Ղուրան, Վեդաներ): Այդ Պ. համարվում են գերբնական, հավիտեն. և անփոփոխ: Առավել հայտնի են Հին կտակարանի տասը Պ. (տասնաբանյա, դեկալոգ), որոնք *Մինա լեռան* վրա ստացել է *Մովսես* մարգարեն:

ՊԱՏՏԻ (Patti) Ադելինա (1843–1919), իտալացի երգչուհի (կոլորատուր. սոպրանո): Հանդես է եկել աշխարհի լավագույն օպեր. թատրոններում (Լյուչիա՝ Գ. Դոնիցետտիի «Լյուչիա դի Լամերմուր», Ռոզինա՝ Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», Վիոլետտա՝ Ջ. Վերդիի «Տրավիատա», Մարգարիտ՝ Շ. Գունոյի «Ֆաուստ», ևն), նաև կամեր. երկացանկով:

ՊԱՏՐԱՆՔՆԵՐ, իլյուզիաներ (լատ.՝ illusio – պատրանք, խաբկանք), իրականության աղավաղված ընկալում, ընկալման խաբկանք: 1. Պ., որպես զգացողության օրգանների անկատարելության հետևանք, բնորոշ է բոլոր մարդկանց (օր.՝ տեսող. Պ.): 2. Պ-ի հոգեկան հատուկ վիճակներով (օր.՝

վախով, հոգեկան գործունեության տոնուսի նվազմամբ) պայմանավորված, իրական օբյեկտի առկայության կեղծ ընկալումը տարբեր է *զգայախաբությունից*: 3. Կեղծ պատկերացումներ՝ կապված անհատի սոցիալ. ուղղվածության հետ: 4. Չիրականացված հույսեր:

ՊԱՏՐԱՍ, ք. Հունաստանի Պելեպոնես թ–կղզում: Բն.՝ 167,4 հզ. (2010): Նվինգստ՝ Հուն. ծովի Պատրայիկոս ծոցում: Զարգացած է բարձրտեխնոլոգ. (էլեկտրոն., կենսաբժշկ. ևն) արտադր–յունը:

ՊԱՏՐԻԱՐՔ (հուն.՝ patriarches – հայրապետ, հայրերի ավագ), ուղղափառ եկեղեցու առաջնորդի բարձրագույն տիտղոս: 1054–ին քրիստ. եկեղեցու բաժանումից (կաթոլիկ և ուղղափառ) հետո այն տրվել է միայն ուղղափառ եկեղեցու պետերին: ՀԱԵ–ում Ամենայն հայոց կաթողիկոսը համարվում է Ծայրագույն Պ.: Պ. են նաև Կ. Պոլսի և Երուսաղեմի հոգևոր առաջնորդները:

ՊԱՏՐԻԿ, Պատրիցիուս (Patrick, Patricius, մոտ 387–461 կամ 493), քրիստոնյա քարոզիչ: Եպս. (432): «Իռլանդիայի առաքյալ», որտեղ նա քարոզել է Կտակարանը և հիմնադրել բազմաթիվ եկեղեցիներ և մենաստաններ:

ՊԱՏՐԻԿ (Պատրիարքյան) Առաքել Նշանի (1894–1984), ազգագրագետ, նկարիչ: 1947–ին հայրենադարձել է: Հեղինակ է XIX–XX դդ–ի հայկ. տարազի գունավոր քարտեզի (1964), աշխ–ների («Պատմագիրք հուշամատյան Սեբաստիո և գավառի հայության», հ. 1, 2, 1974, 1983, ևն), փաստագր. վիպակների («Կոմիտասյան դրամա», 1986, ևն), «Մայաթ–Նովա» (1942, գրկ. մրց.՝ Կահիրե) պիեսի, գեղանկարչ. գործերի («Կոմիտասյան համերգ», 1970, ևն):

ՊԱՏՐԻԿՆԵՐ (լատ.՝ patricii, < pater – հայր), սկզբնապես տոհմ. համայնքի մեջ մտնող ողջ բնիկ բնակչությունը՝ հռոմեացի ժողդ–ը Հին Հռոմում, որը հակադրվում էր *պլեբեյներին*: Պ–ի և պլեբեյների վերնախավերի միաձուլումից առաջացել է *նոբիլիտետը*:

ՊԱՏՐԻՆԴ (Melissa), խուլեղինջազգիների (շրթնածաղկավորներ) ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 5 տեսակ, ՀՀ–ում՝ 1 (դեղատու Պ.)՝ Տավուշի, Սյունիքի մարզերի ստորին և միջին լեռն. գոտիներում: Աճում է չոր, քարքարոտ վայրերում, անտառի բացատներում: Դեղաբույս է. պարունակում է եթերայուղեր, աղաղանյութեր, ստերոիդներ, կարոտին (A–նախավիտամին), C, B վիտամիններ: Պատրաստուկներն օգտագործում են ուռուցքների, ֆուրունկուլների, մարսողության խանգարումների, սրտի անբավարարության ևնի ժամանակ, որպես համեմունք՝ խմիչքների, օծանելիքի արտադր–յան մեջ: Մեղրատու է:


ՊԱՏՐՈՆՈՒԹՅՈՒՆ, հովանավորության հատուկ ձև Հին Իտալիայում, որը ոչ լիիրավ կամ աղքատ քաղաքացիներին կախման մեջ է դրել ունևոր քաղաքացիներից՝ պատրոններից: Ուշ Հռոմ. կայսրությունում որևէ ծերակուտականի Պ–յան (հովանավորություն) տակ են անցել մանր հողատերերը, գյուղեր, համայնքներ և քաղաքներ:

ՊԱՐ, արվ–ի տեսակ. ստեղծվել է մարդու մարմնի ռիթմիկ և արտահայտիչ շարժումներից, որոնք աստիճանաբար մշակվել ու խմբավորվել, ընդհանրացվել են, հաստատվել որոշակի ձևերում՝ դարձել պարաձևեր և պարատեսակներ: Պ. ժող. արվ–ի ամենահին դրսևորումներից է: Տես նաև *Բալետ, Մնջախաղ, Պարարվեստ*:

ՊԱՐԱ (Pará), նահանգ Բրազիլիայում: Տարածքը՝ 1248 հզ. *կմ*^{2}, բն.՝ 7,7 մլն (2012): Վարչ. կենտրոնը՝ *Բելեն*:

ՊԱՐԱ... (հուն.՝ para – մոտ, կողքին), 1. բարդ բառերի սկզբնամաս. նշանակում է մոտ լինելը, նաև շեղում, խանգարում (օր.՝ *պարամետրիկ, պարաբիոզ*): 2. Քիմիայում՝ տես *Օրթո–, Մետա–, Պարա–*:


ՊԱՐԱԱՄԻՆԱԲԵՆԶՈՅԱԿԱՆ ԹԹՈՒ, $H_2NC_6H_4COOH$, մի շարք միկրոօրգանիզմների աճման գործոն (վիտամին). օգտագործվում է ֆոլաթթվի կենսասինթեզի համար: Սուլֆանիլամիդային դեղապատրաստուկները (Պ. թ–ի կառուցվածք. նմանակները) խանգարում են բակտերիաներին՝ օգտագործելու Պ. թ., որով և պայմանավորված է սուլֆանիլամիդների հակաբակտերային ազդեցությունը: Կենդանիների և մարդկանց բջիջները չեն կարող Պ. թ. փոխարկել ֆոլաթթվի:



ՊԱՐԱԲԵԼԼՈՒՄ (լատ.՝ para bellum – պատրաստվիր պատերազմի), 8–լիցքանի ինքնաձիգ ատրճանակ. ստեղծել է ավստրիացի զինագործ, կոնստրուկտոր Գ. Լյուգերը (1849–1923): Տրամաչափը՝ 9 *մմ*: Մինչև 1945–ը գերմ. բանակի զինանոցում էր:


ՊԱՐԱԲԻՈԶ (< *պարա*... և հուն.՝ bios – կյանք), 1. կենդանի հյուսվածքի հակազդեցությունը գրգռիչների ներգործությանը, որն ուղեկցվում է նրա հիմն. հատկությունների (դրդելիություն, հաղորդելիություն) դարձելի փոփոխություններով: «Պ.» հասկացությունը և տեսությունը մշակել է Ն. Ե. *Վվեդենսկին*: 2. Երկու կամ մի քանի օրգանիզմների արհեստ. միակցումն արյան և ավշային համակարգերի միջոցով՝ փոխադարձ հումորալ ազդեցությունները (հորմոնների և այլ մետաբոլիտների) ուսումնասիրելու համար:

ՊԱՐԱԲՈԼ (հուն.՝ parabole), 2–րդ կարգի հարթ կոր. M կետերի բազմությունը, որոնց հեռ–յունները տվյալ F կետից (կիզակետ) և տվյալ D_1D_2 ուղղից (դիրեկտրիս) հավասար են: Ուղղանկյան կոորդինատ. համակարգում Պ–ի հավասարումն է (նկ.)՝ $y^2 = 2px$, որտեղ $p = 2OF$: Տես նաև *Կոնական հատույթներ*:



ՊԱՐԱԲՈԼԱԿԱՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ, տես *Երկրորդ փիզերական արագություն*:

ՊԱՐԱԲՈԼՈԻԴ (< *պարաբոլ* և հուն.՝ eidos – տեսք, ձև), 2–րդ կարգի ոչ փակ մակերևույթ: Առաջանում է պարաբոլի գագաթը մեկ այլ անշարժ պարաբոլով (առանցքը՝ շարժվող պարաբոլի առանցքին զուգահեռ) սահեցնելով այնպես, որ նրա հարթությունը, ինքն իրեն զուգահեռ շարժվելով, մնում է անշարժ պարաբոլի հարթությանն ուղղահայաց: Ստացվում են Էլիպսային (նկ. ա) կամ հիպերբոլային (նկ. բ) Պ–ներ, երբ առաջացնող և «ուղղորդող» պարաբոլների առանցքներն ուղղված են նույն կամ հակառակ ուղղություններով: Էլիպսային Պ–ի մասնավոր դեպքն է պտտման Պ., որն առաջանում է պարաբոլը սեփ. առանցքի շուրջ պտտելով:



ՊԱՐԱԳԱՆԳԼԻԱՆԵՐ, մարդու և ողնաշարավոր կենդանիների ներզատիչ գեղձեր, որոնք տեղակայված են երիկամների, սրտի և աորտայի շրջաններում: Մշակում և արյան մեջ արտադրում են ադրենալին, նորադրենալին, հնարավոր է նաև այլ կատեխոլամիններ:

ՊԱՐԱԳԻԾ, պատկերի փակ եզրագծի երկ–յունը, օր.՝ բազմանկյան բոլոր կողմերի երկ–յունների գումարը:

ՊԱՐԱԳՎԱՅ (Paraguay), գետ Բրազիլիայում և Պարագվայում, Պարանա գետի աջ վտակը: Երկ.՝ 2500 *կմ*, ավազանը՝ 1,2 մլն *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 4000 *մ*^{3}/*վ*: Սկիզբը է առնում Բրազիլ. սարահարթի հս–արմ. մասից: Գլխ. վտակները՝ Ռիո Վաուլե, Պիլքոմայո, Ռիո Բերմեխո: Կարևոր տրանսպորտ. մայրուղի է, նավարկելի է մինչև Կոնսեպսիոն ք.:

ՊԱՐԱԳՎԱՅ, Պարագվայի Հանրապետություն (República den Paraguay), պետություն Հվ. Ամերիկայի կենտր. մասում: Սահմանակից է Բոլիվիային, Բրազիլիային և Արգենտինային: Տարածքը՝ 406,8 հզ. *կմ*^{2}, բն.՝ 7,0 մլն (2015): Մայրաքաղաքը՝ *Ասունսիոն*: Պետ. լեզուները՝ իսպ. և գուարանի: Կառավարման ձևը՝ նախագահահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդր. մարմինը՝ երկպալատ կոնգրեսը: Բաժանված է 17 վարչ. դեպարտամենտի և 1 մայրաքաղաք. մարզի: Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է: Անդամակցում է ՄԱԿ–ին, Մերկոսուրին, ԱռտհԿ–ին ևն: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 4,1 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է սոյա (ընդհ. արժեքի մոտ 35 %–ը), միս (14 %), ձեթ, ալյուր, հացահատիկ, փայտանյութ, բամբակ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, սննդամթերք, հագուստ ևն: Դրամ. միավորը՝ գուարանի:

Հնում Պ–ի տարածքում բնակվել են հնդկացիները: XVI դ–ում նվաճել են իսպանացիները: XVII–XVIII դդ–ում ստեղծվել է ճիզվիտ. պետություն: 1811–ին անկախացել է: 1864–70–ի պատերազմի հետևանքով Պ. կորցրել է տարածքի և բնակչության զգալի մասը: Նավթ. հանքավայրերին տիրելու համար սկսված անգլո–ամերիկ. մրցակցության պատճառով Պ. ներքաշվել է Բոլիվիայի դեմ պատերազմի (1932–35) մեջ, որի հետևանքով երկիրն ավելի մեծ կախվածության մեջ է ընկել օտարերկրյա կապիտալից: ԵՀՊ–ի ժամանակ Պ. չեզոքություն է հայտարարել, սակայն օգնել է Գերմանիային, իսկ պատերազմից հետո ապաստան է տվել նացիստ. հանցագործներին: 1954–89–ին երկիրը ղեկավարել են ռազմաոստիկան. բռնիշխանությունները: 1992–ին ընդունված սահմանադրությամբ ամրագրվել են ժողովրդավար. նորմերը և ինստ–ներ: 2013–ից Պ–ի նախագահն Օ. Կարտեսն է:

ՊԱՐԱԴՈՔՍ (հուն.՝ paradoxos – անսպասելի, տարօրինակ), 1. անսովոր, ավանդույթից տարբերվող պնդում, դատողություն կամ եզրահանգում: 2. (Տրամաբ.)

հակասություն, որն առաջանում է տրամաբանորեն ճիշտ ձևական դատողության արդյունքում և հանգեցնում է հակասող եզրակացությունների:

ՊԱՐԱԶԻՏԻՖՈՐՄ ՏԶԵՐ, սարդակերպների դասի հոդվածոտանիների կարգ: Մարմինը հատվածավորված չէ, որոշ տեսակներինը տարանջատվում է գլխակրծքի և փորիկի, մյուսներինը սերատաճած է: Հայտնի է 8000 տեսակ՝ լայնորեն տարածված: Պ. տ–ի մեջ կան մարդու և կենդանիների մակաբույծներ (արգասային, գամազային, իքսոդային):

ՊԱՐԱԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՌԵԶՈՆԱՆՍ, ռադիոալիքների ռեզոնանս. կլանում՝ պայմանավորված արտաքին էլ. դաշտերում նյութի մասնիկների էլ. դիպոլային մոմենտների վերակողմնորոշմամբ: Դիտվում է պինդ մարմիններում ալիքի երկ–յան *սմ*–ային և ենթա–*սմ*–ային ընդգրկույթներում:

ՊԱՐԱԹԻՐԵՈՒԴ ՀՈՐՄՈՆ, պարաթիրին, մարդու և ողնաշարավոր կենդանիների հորմոն. արտադրվում է *հարվահանագեղձերում*: Ուժեղացնում է կալցիումի մուտքը ոսկրերից արյան մեջ և խթանում կալցիումի ու ֆոսֆատների հեռացումը երիկամներով: Քիմ. բնույթով պոլիպեպտիդ է:

ՊԱՐԱԻԲԱ (Paraiba), գետ Բրազիլիայում: Երկ.՝ 1060 *կմ*, ավազանը՝ 60 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1000 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է առանձին հատվածներում: Կա ջրէկ:

ՊԱՐԱԻԲՈ, նահանգ Բրազիլիայում: Տարածքը՝ 56,5 հզ. *կմ*^{2}, բն.՝ 308 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ *Ժուան Պեսոա*:

ՊԱՐԱԼԱՔՍ (հուն.՝ parallaxis – շեղում), առարկայի (մարմնի) դիրքի տեսանելի փոփոխությունը դիտողի աչքի տեղափոխության հետևանքով: Տարբերում են երկն. լուսատուի դիրքի տեսանելի փոփոխություններ՝ պայմանավորված երկրագնդի՝ սեփ. առանցքի շուրջ (օրական Պ.), արևի շուրջ (տարեկան Պ.) նրա պտույտներով, և Արեգակն. համակարգի՝ Գալակտիկայում տեղափոխությամբ (դարավոր Պ.): Երկն. լուսատուների Պ–ով որոշում են նրանց հեռ–յունը դիտողից:

ՊԱՐԱԿԱԼ, շենքերի մուտքերը, լուսամուտները, այլ բացվածքներն ու խորշերը երիզող դեկորատիվ հարդարանք (զարդանախշեր, քանդակներ): Պ–ի հորինվածք. առանձնահատկությունները կարևոր են հուշարձանը թվագրելու համար: Հայկ. ճարտ–յան մեջ կիրառվում է միջնադարից:

ՊԱՐԱՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, պարանորմալ հոգեկան երևույթների, առանց զգայարանների մասնակցության ընթացող գերզգայուն ընկալումների (հեռազգացություն, պայծառատեսություն, պարապախտորոշում ևն) ուսումնասիրության ոլորտ, մկան. ջանքեր չգործադրելով մարդու ազդեցությունն արտաքին ֆիզ. գործընթացների վրա (տելեկինեզ, պարբժշկություն) ևն: Ծագել է XIX դ–ում: Պ–յան ուսումնասիրած երևույթները գիտ. բավարար բացատրություն չեն ստացել և սուր քննարկումների առիթ են տվել:

ՊԱՐԱՄԱԳՆԻՍ, դրական մագնիս. ընկալունակությամբ (10^{-3}–10^{-6} կարգի) օժտված նյութեր: Պ. են ալկալիական և հողալկալիական մետաղները, որոշ անցում. մետաղներ, Fe–ի, Co–ի, Ni–ի և հազվագյուտ հող. մետաղների մի շարք ջր. լուծույթներ, գազերից՝ O_2–ը և NO–ն: Այդ նյութերի Պ–ականությունը պայմանավորված է էլեկտրոնների ուղեծր. մագնիս. կամ սպին. մոմենտներով: Պ–ական վիճակի անցման ջերմաստիճանից բարձր ջերմաստիճանում Պ–ի են վերածվում նաև ֆեռո–, ֆեռի– և անտիֆեռոմագնիսները:

ՊԱՐԱՄԱԳՆԻՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, նյութի՝ արտաքին մագնիս. դաշտի ուղղությամբ մագնիսանալու հատկությունը: Պ–ով օժտված են այն նյութերը (***պարամագնիսներ***), որոնց ատոմները (իոնները) ունեն մագնիս. մոմենտ, սակայն ինքնաբերաբար չեն մագնիսանում: Մագնիսանալիս ատոմ. մագնիս. մոմենտները դասավորվում են դաշտի ուղղությամբ: Պարամագնիս. նյութի մագնիս. ընկալունակությունը $\chi > 0$–ից և մի շարք նյութերի համար կախված չէ դաշտից, բայց խիստ կախված է T ջերմաստիճանից (Կյուրիի օրենք), ալկալիական մետաղների χ–ի կախվածությունը T–ից թույլ է (Պաուլիի Պ.): Կյուրիի (կամ Նեելի) կետից բարձր ջերմաստիճաններում ֆեռո–, հակաֆեռո– և ֆեռիմագնիսները դառնում են պարամագնիսական (Կյուրի–Վեյսի օրենք): Ատոմականից բացի՝ հայտնի է նաև միջուկ. Պ.:

ՊԱՐԱՄԱՐԻԲՈ (Paramaribo), Սուրինամի մայրաքաղաքը՝ համանուն գետի ափին՝ գետաբերանից 20 *կմ* հեռու: Բն.՝ 246,1 հզ. (2012): Գլխ. ծով. նավնգատ–ն է: Ունի օդանավակայան, համալսարան: Պատմ. կենտրոնը՝ ՅՈՒՆԵՍԿՕ–ի Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՊԱՐԱՄԵՏՐ, տես *Հարաչափ*:

ՊԱՐԱՄԵՏՐԱԿԱՆ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ծագում են տատանող. համակարգերում և ոչ գծային միջավայրում (օր.՝ պլազմայում)՝ դրանց տատանումները ընութագրող հարաչափերի տարածաժամանակ. մոդուլման հետևանքով: Քայքայումային Պ. ա. առաջանում են նույնիսկ ոչ մեծ ամպլիտուդի արտաքին ռեզոնանս. ալիքների (մղման) ազդեցությամբ, մղման մեծ ամպլիտուդների դեպքում կարող են առաջանալ ոչ ռեզոնանս. կամ մոդուլ. Պ. ա.:

ՊԱՐԱՄԵՏՐԻՏ (< *պարա*... և հուն.՝ metra – արգանդ), տես *Հարարգանդաբորբ*:

ՊԱՐԱՄԻՔՐՈՎԻՐՈՒՄՆԵՐ, ՌՆԹ պարունակող վիրուսների սեռ, որոնք առաջացնում են մարդու և կենդանիների վարակիչ հիվանդություններ՝ շնչառ. ուղիների սուր ախտահարմամբ [(հարգրիպ, կարմրուկ, համաճարակ. հարաքանջազեղձաբորբ (պարոտիտ)]:

ՊԱՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, երաժշտության ինագույն տեսակ: Պարին (վալս, մազուրկա ևն) առնչվող տարաբնույթ երաժշտ. պիեսներ, որոնց ռիթմ. բանաձևերն ու տեմպը համապատասխանում են տվյալ պարի շարժումներին: Ժող. երաժշտության մեջ տարբերում են Պ. ե–յան վոկալ (հիմնականում՝ խմբերգ.) և գործիք. տեսակներ: Տարածված են նաև ժող. պարերի բազմազան մշակումներ (Յ. Բրամսի «Հունգարական պարերը», Կոմիտասի դաշնամուր. պարերը, ևն):

ՊԱՐԱՆԱ (Paraná), գետ Բրազիլիայում, Պարագվայում և Արգենտինայում: Երկ.՝ 4380 *կմ*, ավազանը՝ 2663 *կմ*^{2} (Ուրուգվայ գետի հետ՝ 2970 *կմ*^{2}), ջրի միջին ծախսը՝ 17,5 հզ. *մ*^{3}/*վ*: Միախառնվում է Ուրուգվայ գետին, առաջացնում է էստուար և թափվում Լա Պլատա ծոցը: Գլխ. վտակներն են Տիտեն, Պարանապանեման, Իգուասուն, Ուրուգվայը ևն: Նավարկելի է մինչև Պոսադաս ք–ը: Ափին են նաև Սանտա Ֆե, Պարանա ք–ները, Լա Պլատայի ափին՝ *Բուենոս Այրեսը*:

ՊԱՐԱՆՆ, նահանգ Բրազիլիայում: Տարածքը՝ 199,3 հզ. *կմ*^{2}, բն.՝ 10 մլն 444 հզ. (2010): Վարչ. կենտրոնը՝ *Կուրիտիբա*:

ՊԱՐԱՆՆ, ք. Արգենտինայում: *Էնտրե Ռիոս* պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 280 հզ. (2010): Նահզ՝ համանուն գետի ափին:

ՊԱՐԱՆԱՊԱՆԵՄԱ (Paranapanema), գետ Բրազիլիայում, Պարանայի ձախ վտակը: Երկ.՝ 800 *կմ*, ավազանը՝ 99,6 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 900 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է ստորին հոսանքում: Կան ջրէկ, ջրամբար:

ՊԱՐԱՇՅՈՒՏ (ֆրանս.՝ parachute, < հուն. para – ընդդեմ և ֆրանս.՝ chute – անկում), **անկարգել**, մթն–ի դիմադրության հաշվին օբյեկտի անկումն արգելակող սարք: Օգտագործում են բարձր–յունից մարդկանց, բեռների, տիեզ. սարքավորանքների անվտանգ վայրէջքի, ինչպես նաև ինքնաթիռների վայրէջքային վազքի կրճատման նպատակով:

ՊԱՐԱՇՅՈՒՏԱՅԻՆ ՍՊՈՐՏ, ավիացիոն սպորտի տեսակ, թռչող սարքերից (ինքնաթիռ, օդապարիկ ևն) ***պարաշյուտով*** ցատկեր՝ ճշգրիտ վայրէջքով: Լինում են ձգովի (պարաշյուտի բացումը՝ հապաղումով), ակրոբատիկ ֆիգուրների իրականացմամբ, համակցված ևն: Պարաշյուտային հանձնաժողովին (CIP, հիմն.՝ 1950) անդամակցում է ավելի քան 70 երկիր: Աշխարհի առաջնություններն անցկացվում են1951–ից, Եվրոպայինը՝ 1975–ից: Պարաշյուտիստների 1–ին խմբակը Երևանում ստեղծվել է 1933–ին, հետագայում ներառվել ԴՕՍԱԱՖ–ի կազմում: Առաջին ցատկերը կատարել են Ն. Ղարաջյանը, Կ. Մելքումյանը, Պ. Ավետիսյանը, Ա. Խաչատրյանը և ուր.: 1972–ին Երևանում անցկացվել է Պ. ս–ի ԽՍՀՄ առաջնությունը:

ՊԱՐԱՊԼԵԳԻԱ (< *պարա*... և հուն.՝ plege – հարված), 2 ձեռքի կամ ոտքի ***լումանք***:

ՊԱՐԱՊՈԴԻՈՒՄՆԵՐ (< *պարա*... և հուն.՝ podion – ոտիկ), բազմախոզան որդերի մարմնի կողմնային ելուստներ՝ յուրաքանչյուր հատվածամասերի վրա զույգերով տեղակայված:

ՊԱՐԱՊՐՈԿՏԻՏ (< *պարա*... և հուն.՝ proktos – ուղիղ աղի), տես *Հարուղիղաղիաորբ*:

ՊԱՐԱՍԻՄՊԱԹԻԿ ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ, վեգետատիվ նյարդ. համակարգի բաժին. ընդգրկում է երկարավուն ուղեղ., միջին ուղեղ. նյարդ. բջիջները, ողնուղեղի սրբոսկր. բաժինը (ելուստներն ուղղված են դեպի ներքին օրգաններ), ներքին օրգաններում և նրանց մակերևույթին տեղակայված նյարդ. հանգույցները՝ նյարդավորվող հյուսվածքին շփվող հետհանգուցային նյարդ. թելիկների հետ: Պ. ն. հ. սիմպաթիկ նյարդ. համակարգի հետ մասնակցում է բոլոր ներքին օրգանների և գեղձերի գործունեության կարգավորմանը:

ՊԱՐԱՍԿԱՎԻԴԻՈՋ ձիերի, ինվազիոն հիվանդություն, նեմատոդների խմբի հելմինթոզ: Տեղակայվում են բարակ աղիներում, երբեմն՝ ստամոքսում և լեղածորաններում: Ախտանշանները՝ նյարդ. խանգարվածություն, ծակոցներ:

ՊԱՐԱՎԱԿՅԻՆԱ, մարդկանց (հաճախ՝ մասնագիտ.) հիվանդություն, այսպես կոչված, կթվորների հանգուցիկներ (կար–

միր, ոչ ցավոտ բշտիկներ ձեռքերի վրա): Հարուցվում են վիրուսներով, որոնք նման են կովի ծաղիկի վիրուսին:

ՊԱՐԱՏԻՖ, մարդու սուր վարակիչ հիվանդությունների խումբ. նման են որովայն. տիֆին: Հարուցիչները սալմոնելներն են:

ՊԱՐԱՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶ, բարակ աղինեի պարատուբերկուլոզային բորբոքում, Յոնեի հիվանդություն, կենդանիների քրոնիկ. վարակիչ հիվանդություն: Հարուցում են Mycobacterium paratuberculosis բակտերիաները: Ախտանշանները՝ կենդանիների նիհարում և անկում:

ՊԱՐԱՐՎԵՍՏ, ժող. և պրոֆեսիոնալ *պարերի* պատմ. զարգացման ընթացքն ու պարի արվ-ն ամբողջությամբ. պարեր և պար. ներկայացումներ ստեղծելու արվ-ը: Ժող. պարերի հիման վրա սկզբնավորվել է բեմ. պարը: XVII դ–ից, պար. ներկայացումների ի հայտ գալով (տես *Բալետ*), մշակվել է Պ–ի արտահայտչամիջոցների կանոնացված համակարգ, որը հետագայում (XX դ.) անվանվել է դաս. պար: XIX դ–ի վերջին և XX դ–ի սկզբին Պ–ում երևան է եկել *«մոդեռն»* պարը: ՀՀ–ում Պ–ի զարգացմանը նպաստում են մի շարք ժող. երգերի, պարի և բալետ. խմբեր:

ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՔՈԼԵՋ ՀՀ, հիմնադրվել է 1924–ին Երևանում՝ որպես ստուդիա (1937–ից՝ ուսումնարան, 2004–ից՝ քոլեջ): Գործում է 10–ամյա հանրակրթ. ուսուցման ծրագրով: Պատրաստում է պարողներ և մասնագետ ղեկ–ներ օպերայի և բալետի, պարի, երգի–պարի և այլ անսամբլների համար: Դեղ. ղեկ–ներ՝ Սրբուհի Լիսիցյան, Զարեհ Մուրադյան, Մաքսիմ Մարկոսյան, Նորայր Մեհրաբյան, Թերեզա Գրիգորյան, Վիլեն Գալստյան, Հովհաննես Դիվանյան (1998–ից):

ՊԱՐԱՐՏ ԲՋԻՋՆԵՐ, մաստոցիտներ, կենդանիների և մարդու շարակցահյուսվածք. բջիջներ, որոնք արտադրում են ֆիզիոլոգ. ակտիվ նյութեր (հեպարին, հիստամին, սերոտոնին ևն):

ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ, նյութեր, որոնք պարունակում են բույսերի սննդառության տարրեր: Լինում են օրգ., հանք. և մանրէային: Պ. հողին են խառնում, լուծույթներով սրսկում են բույսերը, մշակում սերմերը: Նախատեսված չափաքանակներով Պ–ի օգտագործմամբ բարձրանում է հողի բերրիությունը: Պ–ի կիրառման համակարգը բաղկացած է հիմն. (վարի հետ, աշնանը), նախացանք. (ցանքից առաջ, կուլտիվացիայի տակ) և ցանքակից (սերմի հետ՝ ակոսների մեջ) տիպերից:

ՊԱՐԱՑԵԼՍ (Paracelsus, իսկական անուն–ազգանունը՝ Ֆիլիպ Աուրեոլ Թեոֆրաստ Բոմբաստ ֆոն Հոհենհայմ, 1493–1541), Վերածննդի դարաշրջանի գերմանացի բժիշկ և բնախույզ: *Յատրոքիմիայի* հիմնադիրներից: Խիստ քննադատել է հին բժշկության գաղափարները: Առաջիններից է կիրառել հանք. ջրերը: Նպաստել է բժշկության մեջ քիմ. պատրաստուկների ներդրմանը:

ՊԱՐԱՖԵՆԻԼԵՆԵՐԿԱՄԻՆ, անգույն բյուրեղ. նյութ է, $t_{հալ.}$՝ 147°C: Օքսիդանում է օդի թթվածնով՝ լույսի տակ: Հայտաճիչ է սև–սպիտակ լուսանկարչության մեջ:

ՊԱՐԱՖԻԼՅԱՐՈԶՆԵՐ, ձիերի և խեղ–նեբի հիվանդություններ (նեմատոդոզների խմբից): Հարուցիչները ֆիլյարիդների ընտանիքի կլոր որդերն են: Մակաբուծվում են ենթամաշկ. հյուսվածքներում: Ախտանշանները՝ մաշկ. արյունահոսություն («տրամատ»), քաշի նվազում:

ՊԱՐԱՖԻՆ, նավթամթերք, մոմանման նյութ, հագեցած ածխաջրածինների $C_{18}H_{38}$–$C_{35}H_{72}$ խառնուրդ, $t_{հալ.}$՝ 40–65°C, խտ.՝ 0,880–0,915 $գ/սմ^3$: Ստանում են նավթից: Կիրառում են Պ–ապատ թուղթ պատրաստելու, լուցկու և մատիտների արտադր–յան մեջ ընափայտը տոգորելու, գործվածքեղենի ներծծման համար, որպես մեկուսիչ ևն: Օգտագործվում է նաև բժշկության մեջ:

ՊԱՐԱՖԻՆՆԵՐ, տես *Հագեցած միացություններ*:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԿ, անվերջ տասնորդ. կոտորակ, որում ինչ–որ մասից հետո պարբերաբար կրկնվում է թվերի որոշակի խումբ (պարբերություն), օր.՝ 0,373737 ...–ը մաքուր Պ. կ. է, իսկ 0,253737.... –ը՝ խառը:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, պերիոդիկ հիվանդություն, հայկական հիվանդություն, երևանյան հիվանդություն, շճաթաղանթների (որովայնամիզ, կրծքամիզ) մակերես. ասեպտիկ բորբոքում՝ բորբոքաէքսուդատիվ (էքսուդատիվ) ռեակցիայի գերակշռությամբ: Պատճառը գեներից մեկ զույգում (MEFV) առաջացած մուտացիան է, որը փոխանցվում է ժառանգաբար: Առավել հաճախ հանդիպում է Միջերկրածով. ավազանի, Աֆրիկայի և Մերձ. Արևելքի երկրներում: Հիվանդանում են հատկապես հայերը, արաբները, հրեաները և հույները: Պ. հ. ընթանում է կլինիկ. 3 ձևով՝ որովայն., կրծք. և խառը, բոլոր ձևերին բնորոշ են քրոնիկ. կրկնվող ընթացքը, նոպայի ժամանակ ծանր վիճակը, տարբեր տեղողության միջնոպային (ռեմիսիա) շրջանում բավարար ինքնազգացողությունը, նոպաների նույնատիպությունը ևն:

ՀՀ–ում Պ. հ–յան կլինիկայի հարցերով զբաղվել են Լ. Հովհաննիսյանը, Վ. Ավագյանը, Վ. Աստվածատրյանը, Է. Նազարեթյանը: 1964–ին Երևանի 1–ին կլինիկ. հիվանդանոցում բացվել է Պ. հ–յան և ամիլոիդոզների ԳՀ հիմնախնդրային լաբորատորիա, 1997–ից գործում են Պ. հ–յան հանրապետ., «Արաբկիր» ԵԴԱԻ Պ. հ–յան մանկ. հանրապետ. կենտրոնները: 2015–ին հրատարակվել է «Պարբերական հիվանդության մեթոդական ձեռնարկ»:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ, լրագրեր, ամսագրեր և այլ հրտ–յուններ, որոնք թողարկվում են պարբերաբար՝ սահմանված ժամանակակարգով՝ նույն վերնագրով՝ հաջորդ. աճող համարներով: Պ. մ–ի տեսակներ են թերթերը, հանդեսները, տարեգրքերը, օրացույցները ևն: Պ. մ–ի առաջին օրինակները լույս են տեսել Եվրոպայում XVI դ–ի վերջ–XVII դ–ի սկզբներին:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՕՐԵՆՔ Դ. Ի. Մենդելեևի, քիմ. տարրերի հատկությունները (նաև նրանց միացությունների ձևերն ու հատկությունները) պարբեր. կախման մեջ են ատոմի միջուկի լիցքի մեծությունից: Բացահայտել է Դ. Ի. *Մենդելեևը* 1869–ին:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱ, ֆունկցա, որի արգումենտին որևէ թիվ (0–ից տարբեր, կոչվում է ֆունկցիայի պարբերություն) ավելացնելիս ֆունկցիայի արժեքները չեն փոխվում: Օր.՝ sinx–ը 2π պարբերությամբ Պ. ֆ. է, քանի որ sin (x + 2π) = sinx յուրաքանչյուր x–ի դեպքում: Լայնորեն կիրառվում է մաթ–ում, ֆիզիկայում և տեխնիկայում:

ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ, 1. ժամանակահատված, որում որևէ շարժընթացում գտնվող մարմինը (համակարգը) վերադառնում է իր սկզբն. վիճակին: Տարբերում են տատանման, պտտման և այլ Պ–ներ: 2. (Աստղագիտ.) երկն. մարմնի՝ իր ուղեծրով 1 լրիվ պտույտ կատարելու ժամանակահատվածը: 3. Ռադիոակտիվ իզոտոպների կիսաքայքայման Պ., այն ժամանակն է, որի ընթացքում ռադիոակտիվ նյութի միջուկների թիվը փոքրանում է 2 անգամ: 4. **Աբզաց** (գերմ.՝ Absatz – կարմիր տող, բառացի՝ նահանջ), կապակցված տեքստի մեկ կամ մի քանի նախադասությունից բաղկացած հատված, որը հարաբերականորեն ավարտուն է և ունի միասն. բովանդակություն: Պ. գրաֆիկորեն առանձնացվում է նոր տողով և, որպես կանոն, վերջանում է ոչ լրիվ վերջնատողով:

ՊԱՐԳԵՎԱԿԱՆ, պարգևականք, պայման. հողատիրության ձև միջնադար. Հայաստանում: Կոչվել է նաև *խոստակ* (պարսկ.): Պ–ի կալվածքները երբեմն վերածվել են հայրեն. կալվածքների (տես *Հայրենիք*): Բագրատունիների թագավորության անկումից հետո Պ–ին փոխարինել է *իքտան*:

ՊԱՐԵ (Paré) Ամբրուազ (1510–1590), ֆրանսիացի վիրաբույժ: Մշակել է հրազեն. վերքերի բուժման մեթոդներ, առաջարկել քսուք. վիրակապեր՝ շիկացրած երկաթով վերքերը խարանելու փոխարեն, մի շարք օրթոպեդիկ. սարքեր (արհեստ. ծայրանդամներ, հոդեր):

ՊԱՐԵԿ, փոքր զինված ջոկատ (զինվ. կամ ոստիկանության և կամ քաղաքաց. անձանց) կամ ռազմանավ (ինքնաթիռ)՝ սահմանված վայրի անվտանգության վերահսկողության կամ պահպանման համար:

ՊԱՐԵՁԱՎԱՐԵՐ, անհետացած սողունների ենթակարգ: Ապրել են ուշ պերմում՝ Եվրոպայում, Հվ. Աֆրիկայում և Ասիայում: Երկ.՝ 1–3 *մ*: Հայտնի էր 2 ընտանիք՝ մինչև 15 սեռով: Որոշ Պ. մեջքին ունեցել են ոսկր. թիթեղներից կազմված զրահ:

ՊԱՐԵՆԱԳՈ Պավել Պետրովիչ (1906–1960), ռուս. աստղագետ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1953): Աշխ–ները վերաբերում են աստղ. դինամիկային, փոփոխ. աստղերին: Մշակել է միջաստղ. միջավայրերում լույսի կլանման հաշվարկման եղանակ, հետազոտել է Գալակտիկայի կառուցվածքը:

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՄԱԿ–ի, կառույց, որի նպատակը գղտյան, ձկնորսության ու անտառտնտ–յան զարգացումն է: Տեխ. աջակցություն և պարեն. օգնություն է ցուցաբերում համաշխ. գղտ–յան զարգացմանը, ինչպես նաև կանխատեսումներ և վիճակագր. տվյալներ է պատրաստում այդ ոլորտի համար: Նստավայրը՝ Հռոմում:

ՊԱՐԵՆՀԱՐԿ, պարենային հարկ, բնամթեր. հարկ Ռուսաստանի գյուղաց. տնտ–յուններից, որը *նոր տնտեսական քաղաքականության* անցնելուց հետո՝ 1921–ի մարտին, փոխարինել է *պարենամասնատրմանը*: Շահագրգռել է գյուղացուն ավելացնելու նյութ. բարիքների արտադր–յունը, քանի որ սահմանված հարկը պետությանը վճարելուց հետո ավելցուկը կարող էր վաճառվել շուկայում: Նպաստել է ապրանքադրամ. հարաբերությունների, ազատ շուկայի ձևավորմանը: Դադարեցվել է մինչև կոլեկտիվացման շարժման ծավալումը:

ՊԱՐԵՆՄԱՄՆԱՏՈՒՄ, **պարենային մասնատրում**, գղտ. արդյունքների մթերման համակարգ Ռուսաստանում 1919–21-ին, «*ռազմական կոմունիզմ*»-ի տնտ. բաղադրիչ: Ըստ Պ-ման համակարգի՝ գյուղացիներն անձն. ու արտադր. սպառման նորմաներից ավելի արտադրված ամբողջ հացն ու մյուս մթերքները պետք է կայուն գներով պարտադիր հանձնեին խորհրդ. իշխանության մարմիններին: Դարձել է գյուղացիության դժգոհության ու ըմբոստացման պատճառ, նէպին անցմամբ՝ փոխարինվել է *պարենահարկով*:

ՊԱՐԵՆՔԻՄ (հուն.՝ parenchyma – կողքը լցրած, այստեղ՝ հյուսվածք), 1. բույսերի հիմն. հյուսվածքը. կատարում է յուրացնող, արտադրող. և այլ ֆունկցիաներ: Հարուստ է միջբջ. տարածություններով, որոնցով պայմանավորված է նրա մասնակցությունը գազափոխանակությանը: 2. Կենդանիների Պ. լյարդի, փայծաղի, թոքերի, գեղձերի և այլ օրգանների հիմն. ֆունկցիոնալ հյուսվածքն է:

ՊԱՐԵՏՈ (Pareto) Վիլֆրեդո (1848–1923), իտալացի սոցիոլոգ և տնտեսագետ: Մարդկային գործողությունների խորքային հիմքը համարել է իռացիոնալ զգացմունքները, հաս-յան զարգացման շարժիչ ուժը՝ «ընտրախավի շրջանառությունը»: Փորձել է հիմնավորել բոլոր տնտ. գործոնների (ներառյալ գնի) փոխկապվածության հայեցակարգը: Զևակերպել է եկամուտների բաշխման օրենքը (Պ-ի օրենքը):

ՊԱՐԵՐԳԵՐ, գյուղ. ժող. երգեր, որոնք ուղեկցում են շուրջպարին: Գերակշռում են քնար. բնույթի Պ., որոնց գերիշխող թեման սիրո գովքն ու կատակն են: Բազմազան են եղանակների ռիթմ. պատկերները, նաև չափն ու մոտիվ. կառուցվածքը: Գրառվել են հայկ. գյուղ. Պ-ի բարձրարժեք նմուշներ (Կոմիտաս, «Ալագյազ», «Հողալլո ջան», ևն):

ՊԱՐԶ ԹԻՎ, 1-ից մեծ բնական թիվ, որը չունի այլ բաժանարարներ՝ բացի 1-ից և իրենից. օր.՝ 2, 3, 5, 7, 11 ...: Գոյություն ունեն անվերջ թվով Պ. թ-եր:

ՊԱՐԶ ԼԻՃ, ՀՀ Տավուշի մարզում՝ Արեգունի լ-շղթայի հվ-արմ. լանջին՝ 1335 *մ* բարձր-յան վրա՝ Դիլիջանի ազգ. պարկի տարածքում: Երկ.՝ 450 *մ*, լայն.՝ 70–80 *մ*, մակերեսը՝ 0,027 *կմ*^{2}, առյգն խոր.՝ 18 *մ*, ջրի ծավալը՝ 83, 8 հգ. *մ*^{3}: Ավազանն անտառածածկ է: Ունի ռեկրեացիոն նշանակություն:

ՊԱՐԶ ԿՈՏՈՐԱԿ, սովորական կոտորակ, թվար. կոտորակ, որն այդպես է անվանվել տասնորդ. կոտորակներից տարբերելու համար (օր.՝ $\frac{1}{3}, \frac{1}{7}, \frac{7}{2}$... ևն):

ՊԱՐԶ ՆՅՈՒԹ, միևնույն քիմ. տարրի ատոմներից կազմված նյութ: Պ. ն. քիմ. տարրի ազատ վիճակում գոյության ձևն է: Որոշ քիմ. տարրերի համապատասխանում են մի քանի Պ. ն-եր, որոնք տարբերվում են մոլ-ի կամ բյուրեղացանցի կառուցվածքով (տես *Ալոտրոպիա*):

ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ, տոմար, տոնացույց, օրացույց, եկեղեց. տոնացույցի պարզ ու համառոտ ձեռնարկ: Հայկ. ձեռագրերում հանդիպում են 2 ձևի Պ-ներ՝ աղյուսակ. և պարզ, արձակ շարադրանքով: Պ-ի խորագիրը պայմանավորված է գրքի սկզբում զետեղված տոնացույցի անվանումով: Առաջին Պ. տպագրել է *Հակոբ Մեղապարտը* 1513-ին Վենետիկում:

ՊԱՐԶԿԱՆՔ, Պասկանք, գվո *Արցախ* նահանգ-ում: Պ-ի մասին ամենավաղ տեղեկությունը պահպանվել է *«Աշխարհացոյց»*-ում: Ուշ միջնադարում գվո-ի տարածքը մտել է *Դիզակի մելիքության* մեջ: Ներկայում Պ-ի արմ. փոքր հատվածը վերահսկում է ԼՂՀ:

ՊԱՐԶՅԱՆ (Պարզյանց) Սուքիաս (1837–1914), մանկավարժ, եկեղեց. գործիչ, խմբ.: Արք. (1893-ից): 1895–99-ին՝ Գևորգյան ճեմարանի տեսուչ: 1897–99-ին՝ Մայր աթոռի «*Արարատ*» ամսագրի խմբ.: Պ-ի նյութ. օժանդակությամբ տպագրվել են հայագիտ. աշխ-ներ, հայ մատենագիրների երկերի քննահամեմատ. բնագրեր, նորոգվել է Էջմիածնի տպարանը: Հեղինակ է «Ճանապարհորդական տպաւորութիւնք եւ համառօտ նկարագիր դէպքերի վերջին կաթուղիկոսական ընտրութեան ժամանակ» (1907), «Սուքիաս եպիսկոպոս Պարզեանցի նամակը գրուած Սուրբ Էջմիածնի Սինօդի...» (1907), «Պատուիրակութիւն Սուքիաս եպիսկոպոսի ի Ս.-Պետերբուրգ հոգեւոր դպրոցների մասին» (1907) աշխ-ների:

ՊԱՐԹԱՄԱՄԻՐ (ծ. թ. անհտ–114), Հայոց արքա՝ 113-ից: Պ-ին, առանց Հռոմի համաձայնության, գահ է բարձրացրել Պարթևաց Խոսրով թագավորը՝ գահընկեց անելով նրա ավագ եղբայր Աշխադարին: Հռոմի Տրոյանոս կայսրը, այդ քայլը դիտելով պայմանագրի խախտում (տես *Հռանդեայի պայմանագիր 64*), ներխուժել է Մեծ Հայք, գահընկեց արել Պ-ին և սպանել:

ՊԱՐԹԵՆՈՆ (հուն.՝ parphenon – կույս), *Աթենաս* աստվածուհու տաճարն Աթենքում: Կառուցվել է Ակրոպոլիսում մ. թ. ա. 447–438-ին (ճարտ-ներ՝ Իկտինոս և Կալիկրատես, քանդակ. հարդարման ղեկ.՝ Ֆիդիաս): Ուշագրավ է մասերի բացառիկ համաչափություններով, դորիական և հոնիական օրդերների համադրմամբ, ճարտ. և քանդակ. կերպարներով: Քանդակների մեծ մասը ցուցադրվում է Բրիտ. թանգարանում (Լոնդոն):

ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, **Պարթևստան**, պետություն Իրան. բարձրավանդակում մ. թ. ա. մոտ 250–մ. թ. 220-ական թթ-ին: Առաջին գահակալը *սակերի* պարթև ցեղի առաջնորդ Արշակն էր, որի անունով կոչվել է կառավարող արքայատոհմը՝ *Արշակունիներ*, իսկ պարթև. բոլոր թագավորները կրել են Արշակ անունը՝ իբրև տիտղոս: Պ. թ-յան գահանիստներ են եղել Հեկատոմպիլոսը (այժմյան Դամղանից հվ), Եկբատանը, Տիգրիսի Սելևկիան, Տիզբոնը: Միհրդատ II-ը (մ. թ. ա. մոտ 123–88/87) ամրապնդել է տերությունը, իրեն հռչակել արքայից արքա: Գրավելով Մեծ Հայքի թագավորության մի մասը՝ պատանդ է վերցրել արքայազն Տիգրանին (ապագա՝ *Տիգրան Բ*-ին): Հետագայում Տիգրան Բ-ն գրավել է Պ. թ-յան զգալի մասը, պարթև Արշակունիներին դարձրել իր վասալը և նրանցից վերցրել արքայից արքա տիտղոսը:

Մ. թ. ա. I դ-ի կեսին սկսվել են ռազմ. ընդհարումները Պ. թ-յան և Հռոմի միջև: Վաղարշ I-ի օրոք (մոտ 51–մոտ 80) սկսված պատերազմը (54–64) մի կողմից՝ Պ. թ-յան ու Հայաստանի, մյուս կողմից՝ Հռոմի միջև, ավարտվել է *Հռանդեայի պայմանագրով* (64), իսկ Վաղարշ I-ի եղբայր *Տրդատ Ա*-ն հաստատվել է Հայոց արքա: Տերության անկումից հետո Պ. թ-յան տարածքը մտել է *Սասանյանների պետության* մեջ:

ՊԱՐԹԵՎՅԱՆ Արա Միհրանի (1903–1986), ֆրանսահայ կոմպոզիտոր, դիրիժոր, խմբավար: Հեղինակ է «Տատրագոմի հարսը» (ըստ Կ. Զարյանի) օպերայի, «Ռապսոդիա», «Կովկասյան սիմֆոնիա» և այլ սիմֆ. երկերի, «Պատարագ» մեսա-օրատորիայի, «Նոր երգեր» շարքի (հրտ.՝ 1920), ռոմանսների, խմբերգերի և այլ երկերի: ՀԽՍՀ ՄՆ Պ. Ադամյանի անվ. մրց. (1986):

ՊԱՐԹԵՎՅԱՆ Սուրեն (Պարտիզպանյան Սիսակ, 1876–1921), գրող, հրապարակախոս, խմբ.: «Վաղուան ձայնը», «Նոր կեանք», «Ձայն հայրենեաց», «Ազգ», «Դաշինք», «Անապատին Յուշարձանը» և այլ պարբ-ների խմբ.: Հեղինակ է «Կիլիկեան արհաւիրքը» (1909), «Յիշատակարան Ատանայի աղէտի» (հրտ.՝ 2009) հուշագրությունների, «Հայուհին» (1911), «Արիւնին մատեանը», «Ձայնը հնչեց» (երկուսն էլ՝ 1915), «Արարա: Հայկական լեգէոնը» (1919) վեպերի: Կազմել է «Եգիպտահայ տարեցոյցը» (1914), «Զմիւռնահայ տարեցոյցը» (1919):

ՊԱՐԹԵՎՆԵՐ, Կասպից ծովի հվ-արլ. մերձափնյա մասում (Պարթավա, Պարթևք մարզում) բնակվող ժողդ մ. թ. ա. I հզ-ամյակում և մ. թ. 1-ին դարերում: Եղել են *Մարապարանի*, Աքեմենյան Պարսկաստանի, *Ալեքսանդր Մակեդոնացու*, *Սելևկյանների* տերությունների կազմում: Պ-ի պետության նախն. տարածքը Պարթևքն էր: Լեզուն եղել է իրան. լեզվախմբի արմ. ենթախմբերից: Հիմն. կրոնը *զրադաշտականությունն* էր: Մոտ VI դ-ում Պ. Իրանի արլ-ում (Խորասանում) ձուլվել են պարսիկներին, Միջին Ասիայում (Թուրքմենստանի տարածք)՝ տեղի բնակչությանը:

ՊԱՐԻԻ ԿՂԶԵԽՈՒՄԲ (Parry Islands), Կանադ. արկտիկ. կղզեխմբի կենտր. մասը: Տարածքը՝ մոտ 100 հգ. *կմ*^{2}: Խոշոր կղզիներն են Մելվիլը, Արքայազն Պատրիկը, Բեթերսթը: Մելվիլ կղզում բարձր.՝ մինչև 776 *մ*: Անվանվել է ի պատիվ Ու. Է. Պարիի (1790–1855):

ՊԱՐԻԿՅԱՆ (Բարիկյան) Հայկ (1914–2006), բանասեր, բանաստեղծ, մանկավարժ, խմբ.: Հալեպում 1948–49-ին՝ «Եփրատ», 1950–53 և 1955–58-ին՝ «Բուրաստան», 1958–71-ին՝ «Բարձունք» պարբ-ների, 1975–85-ին՝ *«Գեղարդ»* տարեգրքի խմբ.: Հեղինակ է «Այգեկութք» (1962), «Երգեր հողի եւ մարդոց մասին» (1985) բանաստեղծությունների ժող-ների, «Լեւոն Բաշալեան» (1970), «Պատմութիւն Սուրիոյ հայ տպարաններու» (համահեղ., 1973) աշխ-ների:

ՊԱՐԻՆ Նիկոլայ Վասիլևիչ (1932–2012), ռուս. ձկնաբան: ՌԳԱ թղթ. անդամ (1994): Վ. Վ. *Պարինի* որդին: Աշխ-ները վերաբերում են բաց օվկ-ի ձկների կարգաբանությանը և էկոլոգիային: Պ-ի անունով են կոչվել ձկների տեսակներ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1977):

ՊԱՐԻՆ Վասիլի Վասիլևիչ (1903–1971), ռուս ֆիզիոլոգ: ԽՍՀՄ ԳԱ (1966) և ԲԳԱ (1944) ակադ.: Ն. Վ. *Պարինի* հայրը: Աշխ-ները վերաբերում են թոքային արյան շրջանառության ռեֆլեքս. կարգավորմանը, սրտի ֆիզիոլոգիային, ինչպես նաև բժշկ. կիբեռնետիկայի, տիեզ. ֆիզիոլոգիայի և բժշկության բնագավառներին: ԵԱՀ-ներում և տիեզերանավերում բժշկականսպ. փորձարարության

կազմակերպման և անցկացման մասնակիցներից է։1947–53-ին բռնադատվել է, հետագայում՝ արդարացվել։

ՊԱՐԻՆԻ (Parini) Ջուզեպպե (1729–1799), իտալացի բանաստեղծ։ Հեղինակ է «Գյուղական կյանք», «Առողջ օդ», «Դաստիարակություն» և այլ ներբողների, «Օր» (մաս 1–4, 1763–90, հրտ.՝ 1801) պոեմի, որտեղ ներկայացրել է ազնվականության երգիծ. պատկերը։

ՊԱՐԻՆՅԱՍ (Pariñas), հրվանդան Պերուում, Հվ. Ամերիկայի ծայր արմ. կետը (հվ. լայն–յան 4°45′ և արմ. երկայն–յան՝ 81°20′)։

ՊԱՐԻՍ, Տրոյայի *Պրիամոս* արքայի որդին հուն. դից–յան մեջ։ Ձևսը Պ–ին հանձնարարել է լուծել *Հերայի*, *Աթենասի* և *Աֆրոդիտեի* միջև ծագած գեղեցկության մասին վեճը («Պարիսի դատը»)։ Պ. հաղթող է ճանաչել Աֆրոդիտեին և նրա օգնությամբ առևանգել է Սպարտայի *Մենելայոս* արքայի գեղեցկուհի կնոջը՝ *Հելինեին*՝ առաջացնելով մյուս աստվածուհիների զայրույթը, որի համար Տրոյան կործանվել է։

ՊԱՐԻՍ (Գևորգյան) Գևորգ Հակոբի (1901–1958), բառարանագիր, լեզվաբան։ Հեղինակ է «Պոլիգրաֆիական և հրատարակչական տերմինների ռուս–հայերեն համառոտ բացատրական բառարանի» (1953), «Գրականագիտական տերմինների համառոտ բառարանի» (համահեղ., 1957), «Դպրոցական ուղղագրական բառարանի» (համահեղ., 1956), դպրոց. դասագրքերի։

ՊԱՐԻՏԵՏ (լատ.՝ paritas – հավասարություն), 1. **արժութային**, տարբեր երկրների արժույթների հարաբերակցությունը։ 2. **Իրավաբանական**, կողմերի հավասար ներկայացուցչության սկզբունք։ 3. **Պ. ռազմա–ռազմավարական**, հակառակորդ պետությունների ՋՈՒ–ի հզորության մոտավոր հավասարության վիճակ, երբ կողմերից յուրաքանչյուրն ի վիճակի չէ երկարաժամկետ հեռանկարում հասնել ռազմ. գերազանցության։

ՊԱՐԽԱՐ, հայկ. հեթանոս. տոմարի ամիսների 13–րդ օրվա անվանումը Հայկ. լ–աշխարհի Պարխարի լ–ների (*Արևելապտղային լեռներ*) անունով։

ՊԱՐԽԱՐԻ ՏԱՃԱՐ, X դ–ի ճարտ. հուշարձան Տայք նախգ–ի Պարխար գվո–ի նույնանուն գ–ում։ Եղել է եռանավ բազիլիկ (973, կառուցող՝ *Դավիթ Կյուրապաղատ*)՝ թաղածածկ նավերով, ամբացված կամարներով, ճակատները՝ մշակված կամարաշարով, արմ. և հվ. մուտքերի առջև ընդարձակ նախասրահներով։ Պ. տ. հետագայում վերածվել է մզկիթի։

ՊԱՐԿ (Park) Ռոբերտ Էզրա (1864–1944), ամերիկացի սոցիոլոգ։ Չիկագոյի սոցիոլոգիայի դպրոցի հիմնադիրներից։ Ուսումնասիրելով արտագաղթը որպես կոլեկտիվ վարքի ձև, որը ստեղծում է հաս–յան ընապահպան. կարգ, ներմուծել է «մարգինալ անհատ» հասկացությունը։

ՊԱՐԿԱՄԿՆԵՐ (Didelphidae), **ամերիկյան օպոսումներ**, պարկավորների կարգի կաթնասունների ընտանիք։ Մարմնի երկ.՝ 7–50, պոչինը՝ 4–55 *սմ*։ Հայտնի է 80 տեսակ՝ Ամերիկայում։ Որսի կենդանի է (միսը)։ Սովոր. Պ. լարորատոր կենդանի է։

ՊԱՐԿԱՊԶՈՒԿ, տիկ, ժող. փող. լեզվակավոր երաժշտ. գործիք։ Բաղկացած է կաշվե պարկից, օդամուղ փողակից, եղեգնյա պարզ կամ կրկնակի մի քանի լեզվակավոր նվագափողերից (ՀՀ–ում՝ պկու կամ պզուկ, գործածում են նաև առանց օդամուղ պարկի, փչում են բերանով), որոնցից մեկ–երկուսը ձայնանցքերով են, նույնքանն էլ՝ առանց ձայնանցքերի՝ բասային են (*դամ* պահելու համար)։ ՀՀ–ում տարածված է 2 նվագափողով (ձայնանցքերով) տեսակը։

ՊԱՐԿԱՎՈՐ ԱՐՋ (Phascolarctos cinereus), **կոալա**, մագլցող պարկավորների ընտանիքի կաթնասուն։ Մարմնի երկ.՝ 60–82 *սմ*, կ. զ՝ մինչև 16 *կգ*, պոչն արտաքինից աննկատ է։ Ապրում է Արլ. Ավստրալիայում՝ նվենու անտառներում։ Ծառաբնակ է. սնվում է նվենու տերևներով։ Արդյունահանության (մորթին) պատճառով թվաքանակը խիստ նվազել է. պաշտպ–յան տակ է։

ՊԱՐԿԱՎՈՐ ԳԱՅԼ (Thylacinus cynocephalus), **թասմանյան գայլ**, պարկավոր կաթնասունների կարգի պարկավոր գայլերի ընտանիքի միակ տեսակը։ Մարմինը երկարացած է, գլուխը՝ նման է շան գլխի։ Մարմնի երկ.՝ 100–130, պոչինը՝ 50–60 *սմ*։ Տարածված է եղել ամբողջ Ավստրալիայում (մինչև դինգոյի բնակեցումը), նաև Նոր Գվինեայում։ XX դ–ի 40–ական թթին լրիվ վերացել է։ Գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում։

ՊԱՐԿԱՎՈՐՆԵՐ (Marsupiala), կաթնասունների կարգ։ Ընդգրկում է 9 ընտանիք՝ պարկամկներ, գիշատիչ, մագլցող Պ., մրջնակերներ, փորսուղներ, խլուրդներ, ցենոլեստներ, վոմբատներ և կենգուրուներ կամ ցատկող Պ.։ Մեծ մասի էգերին բնորոշ է մաշկի ծալքով պարկը, որտեղ պահում են ձագերին։ Տարածված են Ամերիկայում, Ավստրալիայում և շրջակա կղզիներում։

ՊԱՐԿԻ (Parcae), ճակատագրի աստվածուհիներ հռոմ. դից–յան մեջ։ Համապատասխանում են հռոմ. մոյրաներին։

ՊԱՐԿԻՆՍՈՆԻԶՄ, կլինիկ. համախտանիշ՝ պայմանավորված գլխուղեղի ենթակեղև. կորիզների ախտահարմամբ՝ աթերոսկլերոզի, գլխուղեղի բորբոքման, վնասվածքների, դողդոջուն լուծանքի և այլ դեպքերում։ Դրսևորվում է անշարժությամբ, կաշկանդվածությամբ, դիմախաղի բացակայությամբ, ձեռքերի և ոտքերի դողդողալով, քայլվածքի, խոսքի խանգարումներով ևն։ Նկարագրել է անգլիացի բժիշկ Ջ. Պարկինսոնը 1817–ին։

ՊԱՐԿՈՒԽ, 1. **հրետանային Պ.**, բարակապատ մետաղե բաժակ, որտեղ տեղադրում են նետող. լիցքը, բոցավառման միջոցները (պատիճ. վոան, պատիճ) ևն։ 2. **Հրաձգային զենքի փամփուշտի Պ.**, հրետան. Պ–ի փոքր տարբերակն է։ Վառոդ. լիցքի և Պ–ի փողին ամրացված գնդակի հետ կազմում է հրազենի միասն. փամփուշտը։ 3. **Որսորդական փամփուշտի Պ.** (մետաղե կամ ստվարաթղթե), լիցքավորում են վառոդով, արկով (մանրագնդակ կամ գնդակ) և խիցերով։

ՊԱՐՀՈՆ (Parhon) Կոնստանտին (1874–1969), ռումին բժիշկ և կենսաբան։ Ռումինիայի ԳԱ ակադ. (1938) և պատվ. նախագահ, ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1947), Ազգ. Մեծ ժողովի նախագահության նախագահ (1947–52)։ Աշխ–ները վերաբերում են ծերաբանության և ծերաբուժության, նյարդաբանության, հոգեբուժության, ներզատաբանության և ընդհ. ախտաբանության հարցերին։

ՊԱՐՄԱ (Parma), ք. Իտալիայի Էմիլյա–Ռոմանյա մարզում՝ համանուն գետի (Պոի վտակ) ափին, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը։ Բն.՝ 188,6 հզ. (2010)։ Պ–ում կազմակերպվում է պահածոների ամենամյա տոնավաճառ։ Ունի համալսարան, Գեղեցիկ արվ–ների ակադ., Ազգ. պատկերասրահ և Հնության ազգ. թանգարան։ Հնում՝ Էտրուսկների, ապա՝ գալլերի բնակավայր։ 1545–1860-ին (ընդմիջումներով)՝ Պարմա և Պյաչենցիների հերցոգությունների մայրաքաղաքը։ Պատմ. ճարտ. հուշարձաններից են տաճարը (XI–XIII դդ.), Պալացցո դելա Պիլոտտան (XVI–XVII դդ.) ևն։

ՊԱՐՄԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Իտալիայի հնագույն համալսարաններից։ Հիմնադրվել է 1482–ին։ 2016–ին ուներ շուրջ 30 հզ. ուսանող։

ՊԱՐՄԵՆԻԴԵՍ ԷԼԵԱՑԻ (մ. թ. ա. մոտ 540/520–450), հույն փիլ.։ Էլեական դպրոցի հիմնադիրներից։ Առաջինն է ընդգծել մտահասանելի, անփոփոխ և հավերժ («միասնական») կեցության (իրական գիտելիքի ոլորտը) և զգայություններով ըմբռնելի փոփոխ. ու անցողիկ հոսունությամբ բոլոր իրերի (կարծիքի ոլորտ) միջև առկա սկզբունք. տարբերությունը, ձևակերպել է կեցության և մտածողության նույնականությունը։

ՊԱՐՄԻՋԱՆԻՆՈ (Parmigianino, Մացցոլա) Ֆրանչեսկո (1503–1540), իտալացի գեղանկարիչ։ Կտավների նրբազեղ սառը գուներանգն ու հղկված գծանկարն արտահայտում են սառը, միաժամանակ՝ զգայական–առեղծված. գեղեցկության իդեալը («Երկար պարանոցով Տիրամայրը», 1534–40)։

ՊԱՐՈԴԻԱ, ծաղրանմանություն, ժանր գրկ–յան և երաժշտության մեջ, թատրոնում, էստրադայում, կերպարվ–ում։ Ստեղծագործության գիտակցաբար կոմիկ. նմանակումը։ Պ–ի առաջին նմուշները ի հայտ են եկել անտիկ շրջանում։ Որպես գր. ժանր՝ Պ. սովորաբար կառուցվում է ստեղծագործության ոճի և թեմատիկայի միտումնավոր անհամապատասխանության հիման վրա։ Լինում է սատիր. և հումորային։ Ստեղծվել են Պ–ի հատուկ թատրոններ (օր.՝ «Ծուռ հայելի»՝ Պետերբուրգում), օպերաներ, կրկես. ներկայացումներ, կինոնկարներ ևն։ Հայ գրողներից Պ–ներ են ստեղծել Մ. Նալբանդյանը, Հ. Թումանյանը և ուր.։

ՊԱՐՈՂ ՔԱՐԱԹՈՂՆԱԿ (Oenanthe isabelliina), *կառնախնկերի* ընտանիքի թռչուն։ Բնադրող է, չվող, տարածված։ Մարմնի երկ.՝ 16,5, թևերի բացվածքը՝ 27–31 *սմ*, կ. զ.՝ 30–31 *գ*։ Արագավազ է, վազելիս հաճախ կանգ է առնում՝ շրջապատը զննելու։ Բնակվում է չոր լ–տափաստաններում, կիսաանապատներում։ Մնվում է անողնաշարներով։

ՊԱՐՈՆԻԿՅԱՆ Երվանդ Գառնիկի (ծ.1951), քիմիկոս–օրգանիկ։ Քիմ. գիտ. դ–ր (1997), պրոֆ. (2003)։ Աշխ–ները վերաբերում են տարացիկլ. միացությունների, մասնավորապես՝ կոնդենսված պիրոլի և պիրիդինի ածանցյալների սինթեզին, քիմ. հատկությունների և կենսբ. ակտիվության հարցերին։ Հայտնաբերել է նոր վերախմբավորումներ, իրականացրել բարձր արդյունավետությամբ օժտված կենսաբանորեն ակտիվ միացությունների նպատակային սինթեզ։ Նյու Յորքի ԳԱ անդամ (1995)։

ՊԱՐՈՆԻԿՅԱՆ Մայրանուշ Ղևոնդի (1910–1990), դերասանուհի։ ՀԽՍՀ վաստ. արտիստ (1950)։ Ստեփան *Թարյանի* կինը։ 1932–ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի

անվ. թատրոնի դերասանուհի (Կեկել՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», Մարգարիտ՝ Շիրվանզադեի «Պատվի համար», Լարիսա՝ Ա. Ն. Օստրովսկու «Անօժիտը», Կորդելիա՝ Վ. Շեքսպիրի «Լիր արքա», ևն): Նկարահանվել է «Ոսկե գլիկ», «Երևանյան օրերի խրոնիկա» և այլ ֆիլմերում:

ՊԱՐՈՆՅԱՆ Արաքսի Խաչատուրի (ծ. 1943), կենսաբան: Կենսբ. գիտ. դ-ր (2003): Աշխ-ները վերաբերում են ՀՀ լուսասուն (ֆոտոտրոֆ) բակտերիաների կենսբ. առանձնահատկություններին և նրանց կիրառության հեռանկարի հարցերին:

ՊԱՐՈՆՅԱՆ Իվան Հմայակի (ծ. 1939), գյուղատնտես: Կենսբ. գիտ. դ-ր (1995), պրոֆ. (2000): Աշխ-ները վերաբերում են գղտ. կենդանիների նվազող տեղ. ցեղերի գենոֆոնդի պահպանման և օգտագործման հարցերին: Պ-ի գլխավորությամբ մշակվել է ՌԴ «Գյուղատնտեսական կենդանիների ցեղերի գենոֆոնդի պահպանության» դաշն. ծրագիր: ՌԴ Պետ. մրց. (1995):

ՊԱՐՈՆՅԱՆ Հակոբ Հովհաննեսի (1843–1891), գրող-երգիծաբան, հրապարակախոս, խմբ.: «Փող արեւելեան», «Եփրատ», «Մեղու», «Լոյս», «Թատրոն», «Թատրոն բարեկամ մանկանց», «Երկրագունտ», «Խիկար» պարբ-ների խմբ.: Գր. ասպարեզ է իջել «Երկու տէրով ծառայ մը» (1865, հրտ.՝ 1911) և «Ատամնաբոյժն արեւելեան» (1868) կատակերգություններով: 1886–87-ին Կ. Պոլսի «Խիկար» երգիծ. ամսագրում հրատարակվել են «Պաղտասար աղբար» կատակերգությունը, որն առանձնանում է բախումների սրամիտ լուծումներով, խոսքի և դրության կոմիզմով, «Քաղաքավարութեան վնասները», որտեղ օտարամոլ հերոսներն անհատականությունից զուրկ հայ մտավորականներ են, «Խօսակցութիւնք մեռելոց» կատակերգությունները (1910, «Ամբողջ երկեր», հ. 1–3): Հեղինակ է նաև «Ազգային ջոջեր» (1879), «Պտոյտ մը Պոլսոյ թաղերու մէջ» (1880), «Ծիծաղ» (1883), «Մեծապատիւ մուրացկաններ» (1887), «Հոսհոսի ձեռատետրը» (1892), «Երկասիրութիւններ» (Ա, Բ, Գ, 1899–1900), «Երգիծաբանական հատուածներ» (1904) երգիծ. գործերի, արվ-ի և գրկ-յան հարցերին նվիրված քննադատ. հոդվածների:

ՊԱՐՈՆՅԱՆ Շուշանիկ Հարությունի (ծ. 1956), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ-ր (2010), պրոֆ. (2014): Աշխ-ները վերաբերում են գործաբան., ճանաչող. լեզվաբ-յունների, անգլ-ի զարգացման խնդիրներին: Հեղինակ է «Լեզվաճանաչողություն և դիսկուրս» (2011) և այլ աշխ-ների:

ՊԱՐՈՆՅԱՆ Ռուբեն Լազարի (1894–1978), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (1954), պրոֆ. (1956): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1965): Ուսումնասիրել է արյան փոխներարկման, կլինիկ. վիրաբուժության հարցեր: 1940-ին ՀԽՍՀ-ում առաջինն է կատարել ստամոքսի մասնահատում՝ խոց. հիվանդության ժամանակ, կիրառել ողնուղեղ. անզգայացումը՝ սովկաինով (1948): Մշակել է լյարդի ընդծակման (պունկցիա) նոր մեթոդ:

ՀԽՍՀ ԱՆ գլխ. վիրաբույժ (1954–58):

ՊԱՐՈՆՅԱՆ Սլավիկ Բաղդասարի (1929–2014), գեղանկարիչ: ՀՀ ժող. նկարիչ (2012): Հեղինակ է հիմնականում բնանկարների («Աշուն», 1980, «Արայի լեռը», 1996, «Ծիրանի ծառ», 1997, «Արարատ», 2001, «Արագած», 2002, «Գարուն», 2003, «Վարած հող», 2004, ևն), նաև դիմանկարների («Ինքնադիմանկար», 1982, ևն):

ՊԱՐՈՊԱԺԻՉ, լեռն. համակարգ Աֆղանստանում: Երկ.՝ 600 *կմ*: Հիմն. լ-շղթաներն են Բանդի Թուրքեստանը, Հիսարյանը (բարձր.՝ մինչև 4591 *մ*): Պ. խորը կտրտված է Մուրղաբ, Սուրխաբ, Հերիռուդ գետերով: Ծածկված է լեռն. կիսաանապատներով և տափաստաններով:

ՊԱՐՊԻՉ, էլեկտրատեխ. սարք, պարզագույն դեպքում կազմված է 2 կամ մի քանի էլեկտրոդներից, որոնք բաժանված են դիէլեկտրիկ. բացակով (օր.՝ օդով): Կիրառում են էլ. ցանցերն ու սարքավորումները գերլարումից պաշտպանելու (Պ-ի էլեկտրոդների միջև առաջացած պարպումը կանխում է հաղորդիչների մեկուսիչների ծակումը), ինչպես նաև էլ. շղթաների փոխարկման համար:

ՊԱՐՍԱՄՅԱՆ Ալբերտ Սուրենի (1935–1995), գեղանկարիչ: ՀԽՍՀ վաստ. նկարիչ (1983): Էլմա *Պարսամյանի* եղբայրը: Հեղինակ է բնանկարների, նատյուրմորտների, դիմանկարների («Երեկո», 1965, «Դիմանկար արևածաղիկներով», 1970, «Ձմեռը Բյուրականում», «Նատյուրմորտ», երկուսն էլ՝ 1982, ևն), որոնց ընորոշ են տաք, հատակ գունահամադրումը:

ՊԱՐՍԱՄՅԱՆ Անահիտ (Աննա) Հարությունի (1947–2017), բանաստեղծուհի, հրապարակախոս: Հեղինակ է «Փյունիկ» (1973), «Խոստովանանք» (1977), «Օրվա հեքիաթներ» (1982), «Աստղականչ» (1987), «Բանաստեղծություններ» (2004), «Հոգեմատյան» (2008) քնար. բանաստեղծությունների, «Արքայադուստրը» (1975), «Երկնագույն ափսեն» (1980), «Ինչ են խոսում կեռասները» (1985), «Թագուհի վարդը» (1989) մանկ. հեքիաթների ու բանաստեղծությունների ժող-ների, «Շուշան-Վարդենի» (2007), «Օշինդրի բույրը կամ Սուրբ Վահան Գողթնացի» (2010), «Աշոտ Երկաթի խաչը» (2013) վիպակների: Կատարել է թարգմ-յուններ:

ՀԳՄ Ա. Իսահակյանի անվ. մրց. (2004), ՀԳՄ «Գրական վաստակի համար» մեդալ (2007):

ՊԱՐՍԱՄՅԱՆ Էլմա Սուրենի (ծ. 1929), աստղաֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1984), պրոֆ. (1989): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2000): Ալբերտ *Պարսամյանի* քույրը: Կազմել է գիսավորաձև միգամածությունների նոր քարտացուցակ: Մշակել է աստղակույտերի տարիքը որոշելու եղանակ (առաջինը՝ NGC 7000-ի տարիքը), տվել է *Օրիոն* համաստեղության աստղերի բռնկման հաճախության բաշխման ֆունկցիան, հաստատել է (Գ. Արոյի հետ) բռնկման պարբերությունը: Պ-ի անունով են կոչվել իր հայտնաբերած (Միշա Ղազարյանի հետ) գիսավորաձև և մոլորակաձև որոշ միգամածություններ, ինչպես նաև Օձի համաստեղության աստղերից մեկը (1997, Յուրիխ): Միջազգ. աստղագիտ. միության (1976), Եվրոպ. աստղագիտ. ընկ-յան (1990), Նյու Յորքի ԳԱ (1995) անդամ:

Բյուրականի աստղադիտարանի ArAs մրց., ՀՀ «Անանիա Շիրակացի» (2003) մեդալ:

ՊԱՐՍԱՄՅԱՆ Խաժակ (ավազանի անունը՝ Սարգիս, ծ. 1951), եկեղեց. գործիչ: Աստվածաբանության դ-ր (1988, Օքսֆորդի համալսարան): Եպս.՝ 1990-ից: 1990-ից՝ ԱՄՆ-ի Արլ. թեմի առաջնորդ: ԵՊՀ (1998), ՀՀ ԳԱԱ (1999) պատվ. դ-ր, Երևանի գեղարվ-ի պետ. ակադ-ի պատվ. պրոֆ. (2003):

ՊԱՐՍԱՄՅԱՆ Մերուժան Ասատուրի (1883–1944), բանաստեղծ, խմբ.: Մկրտիչ *Պարսամյանի* եղբայրը: Փարիզում 1910–14-ին հիմնադրել և խմբագրել է «Մեր տարեցոյցը», 1911–15 և 1918–19-ին՝ «Շանթ», 1931–40-ին՝ «Կեանք եւ արուեստ» (եղբոր հետ) պարբ-ները: Հեղինակ է «Անրջանք» (1904), «Քրիզանթէմ» (1908), «Բանաստեղծին սիրտը» (1910), «Մարմներգութիւն» (1919), «Տղամարդը և կինը» (ֆրանս., 1925), «Բանաստեղծները Նոյյան տապանի մեջ» (ֆրանս., 1933), «Մարդկային» (1938) բանաստեղծությունների ժող-ների, «Ապտիւլ Համիտ Բ» (1909) նոթերի, «Պետրոս Էֆ. Հալաճեան» (համահեղ., 1910) ուսումնասիրության, «Հսկումը» (1910) դրամայի:

ՊԱՐՍԱՄՅԱՆ Մկրտիչ Ասատուրի (1886–1966), արձակագիր, խմբ., մանկավարժ: Մերուժան *Պարսամյանի* եղբայրը: Որպես ուսուցիչ և տնօրեն աշխատել է Մեզիրեի, Կարինի, Տրապիզոնի, Կոնիայի ու Սամաթիայի հայկ. վարժարաններում: Եղել է Փարիզի «Նահատակ գրագետներու բարեկամներ» (1929, 1939-ից՝ «Հայ գրագետներու բարեկամներ») հրատարակչատան հիմնադիրներից: Փարիզում եղբոր հետ խմբագրել է «Կեանք եւ արուեստ» (1931–40) պարբ-ը: Հեղինակ է «Արիւնի տօնը» (1913), «Մեռնող գիւղին պատմութիւնը» (ա. թ.) պատմվածքների ժող-ների, «Աւետիս Ահարոնեան: Իր կեանքը եւ գրականութիւնը» (1930), «Արևմտահայ բանաստեղծներ» (1937) աշխ-ների:

ՊԱՐՍԱՄՅԱՆ Ռուբեն Հովսեփի (1920–1989), արվեստաբան, պետ. գործիչ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1960): 1953–67-ին՝ ՀՊՊ (այժմ՝ ՀԱՊ) տնօրեն, 1972–79-ին՝ ՀԽՍՀ մշակույթի նախարար, 1979-ից՝ ՆԽ-ին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ: Հեղինակ է «Ստեփան Աղաջանյան» (1963) երկի, կազմել է «Հայկական ՍՍՀ կերպարվեստը» (ռուս., 1957, համահեղ.), «Հայաստանի պետական պատկերասրահ» (ռուս., 1960) գրքերը:

ՊԱՐՍԱՄՅԱՆ Վարդան Արամի (1909–1990), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր, պրոֆ. (1947): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): Աշխ-ները վերաբերում են ազգ-ազատագր. շարժումներին, հաս-քաղ. հոսանքների պատմությանը, Հայաստանում ցարիզմի քաղ-յանը:

ՊԱՐՍԱՏԻԿ, պարս, պարսետ (պհլ.՝ pars – կապ, կապիչ), հնագույն ձեռնանետ զենք: Պատրաստվել է կաշվե փոկից, որի լայնացող միջնամասում դրել են քար կամ կապարագունդ: XVI–XVII դդ-ում եվրոպ. երկրներում գործածել են նռնակներ նետելու համար:

ՊԱՐՍԵԼ (Pursell) Էդվարդ Միլս (1912–1997), ամերիկացի ֆիզիկոս: 1945-ին հայտնագործել է (Փաունդի և Թոռի հետ) ՄՄՌ-ի երևույթը, առաջինն է գրանցել տիեզերքում չեզոք ջրածնի ռադիոճառագայթումը (21 *սմ* երկ-յան ալիքներ), որի շնորհիվ 1-ին անգամ դիտվել է Ծիրկաթի պարուրաձև թևը: Քվանտ. օպտիկայում և նանոտեխնոլոգիաներում հայտնի է «Պարսելի գործոն» հասկացությունը: Նոբելյան մրց. (1952, Ֆ. *Բլոխի* հետ):

ՊԱՐՍԵԿ [< լատ. par(allax) և sec(unda)], երկ-յան արտահամակարգ. միավոր

աստղագիտ–յան մեջ: Հավասար է այն հեռ–յանը, որի վրա աստղի տարեկան պարալաքսը կազմում է 1″, նշանակվում է *պս*–ով: 1 *պս* = 206205 *ա. մ.* = 3,262 լուսատարի = $3{,}086 \cdot 10^{16}$ *մ*:

ՊԱՐՍԵՂՈՎ Միքայել Արտեմի (1899–1964), հրետանու գեն–գնդ. (1958): ԽՄ հերոս (1940): Մասնակցել է *Խորհրդա–ֆինական պատերազմին*, գլխավորել հրետ. դիվիզիա: Հերոսի կոչման արժանացել է *«Մաներհայմի գիծ»*–ի ճեղքման մարտերում ցուցաբերած ռազմավար. հմտության համար: ՀՄՊ–ի ժամանակ՝ Հվ–արմ. ռազմաճակատի հրամ–ի տեղակալ, ապա՝ բանակի հրամ.: Մասնակցել է (1945) Ճապոնիայի ջախջախմանը: 1962–ից՝ Մ. Կալինինի անվ. հրետ. ակադ–ի հրամ., ֆակ–ի պետ:

Լենինի (3), Կարմիր դրոշի (4), Սուվորովի 2–րդ աստիճանի (1945) շքանշաններ:

ՊԱՐՍԻԿՆԵՐ (ֆարսի, ինքնանվանումը՝ իրանի), ժողդ, Իրանի հիմն. բնակչությունը (47,6 մլն): Ապրում են նաև Թուրքիայում, Իրաքում և այլ երկրներում: Ընդհ. թիվը՝ ավելի քան 55 մլն (2010): Լեզուն՝ ֆարսի: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են:

ՊԱՐՍԻՒ ԺՈՂՈՎ 612/613 (այլ տվյալներով՝ 615/616), **Տիզբոնի եկեղեցական ժողով**, հրավիրել է Պարսից արքա Խոսրով II Ափարվեզը՝ Երուսաղեմի նվաճումից հետո՝ պարսկահպատակ քրիստոնյաների մեջ դավանանքի միասնություն հաստատելու նպատակով: Հայաստանից մասնակցել է Մամիկոնենից Կոմիտաս եպս–ը (վերադարձից հետո՝ *Կոմիտաս Ա. Աղցեցի* կաթողիկոս) և Ամատունյաց Մատթեոս եպս–ը: Պ. ժ–ում ընդունվել են միայն Տիեզ. առաջին 3 ժողովները, մերժվել են քաղկեդոնականությունը, նեստորականությունը:

ՊԱՐՍԻՒ ԾՈՎ, Հնդ. օվկ–ի հս–արմ–ում՝ Ասիայի ափերի մոտ: Հորմուզի նեղուցով և Օմանի ծոցով միացած է Արաբ. ծովին: Մակերեսը՝ 240 հզ. *կմ*^{2}, խոր.՝ 115 *մ*: Ծոց է թափվում Ժատ էլ Արաբ գետը: Ափին մոտ կան կղզիներ: *Շեյխը* հարուստ է նավթի խոշոր պաշարներով (Պարսից ծոցի նավթագազ. ավազանի մաս): Զարգացած են ձկնաբուծությունը և մարգարիտի արդյունահանումը: Հիմն. նվինգստ–ներն են՝ Ֆաո, Բասրա (Իրաք), Աբադան, Բենդեր–Հոմեյնի (Իրան), Էլ Քուվեյթ (Քուվեյթ), Ռաս Տանուրա (Սաուդյան Արաբիա), Մանամա (Բահրեյն), Ումմ Սաիդ (Քաթար): Պ. ծ–ում պատերազմի (1991–ի հունվ–փետր.) հետևանքով ծոցի և նրա ափերի մի շարք շրջանների էկոլոգիան լուրջ վնաս է կրել:

«ՊԱՐՍԻՒ ՊԱՏԵՐԱԶՄ», հայ հին ժող. հերոսավեպ: Հատվածաբար գրառվել, որոշ չափով վերամշակվել և պահպանվել է Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Սեբեոսի, մասամբ՝ Հովհան Սամիկոնյանի, Մովսես Կաղանկատվացու և Ստեփանոս Օրբելյանի պատմագր. երկերում: «Պ. պ.»–ի բովանդակությունը հայերի և պարսիկների երկարատև ու պարբեր. կռիվներն են, որոնք միշտ ավարտվել են հայերի հաղթանակով: Բաժանվում է վիպ. մի քանի ճյուղերի՝ թագավորների ու սպարապետների անուններով (Խոսրով Մեծ և Տրդատ, Խոսրով Կոտակ և Վաչե են):

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՎԱԶԱՄՈՒԿ (Meriones persicus), *ավազամկների* ընտանիքի կաթնասուն կենդանի: Մարմնի երկ.՝ 17,5, պոչինը՝ 18,8 *սմ*: Մարմնի վերին մասն ավազագույն է, որովայնը՝ սպիտակավուն: Ապրում է միայնակ՝ գետնափոր, պարզ կառուցվածքով բներում: Մնվում է խոտաբույսերով ու սերմերով: Ժանտախտի հարուցչի հիմն. կրողն է:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔ, 1. **1722–23**, Ռուսաստանի կայսր Պետրոս I–ի հրամանատարությամբ ռուս. բանակի և նավատորմի արշավանքը Պարսկաստանի մերձկասպյան տիրույթներ. նպատակն անդրկովկաս. ժողդ–ներին պարսկ. լծից ազատագրելու պայքարին նպաստելն էր, Ռուսաստանի առևտր. կապերն արլ. երկրների հետ ապահովելը, Այսրկովկասում թուրքերի ծավալմանը խոչընդոտելը: Ռուս. Կաո–յունը համաձայնության էր եկել Քարթլիի թագավոր *Վախթանգ VI*–ի և *Եսայի Հասան–Ջալալյանի* հետ, ըստ որի՝ հայ–վրաց. միացյալ ուժերը և ռուս. զորքերը միանալու էին Շամախիում և գործելու էին համատեղ: Սակայն անբարենպաստ քաղ. պայմանների պատճառով ռուս. զորքերը հետ են դարձել:

2. **1796**, ռուս. զորքերի արշավանքը Պարսկաստանի մերձկասպյան տիրույթներ: Սայիսին ռուս. զորքերը գրավել են Դերբենդը, հունիսին (առանց մարտերի)՝ Բաքուն և Դաբան, նոյեմբ–ին հասել են Կուրի և Արաքսի խառնարանին: Կայսրուհի *Եկատերինա II*–ի մահից հետո նրան հաջորդած Պավել I–ը գրավված տարածքներից հետ է կանչել ռուս. զորքերը (1796–ի դեկտ.):

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԿԱՏՈՒ, երկարաբուրդ կատուների ցեղ: Բուծվել է Մեծ Բրիտանիայում: Խոշոր, մկանուտ կենդանի է՝ խիտ բրդով և փամփլիկ պոչով: Գլուխը կլոր է, քիթը՝ կարճ և ճակատին միացման տեղում փոս ընկած:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԿԼՈՐԱԳԼՈՒԽ ՄՈՂԵՍ (Phrynocephalus persicus), **անդրկովկասյան թակիրային կլորագլուխ մողես**, *ագամաների* ընտանիքի կլորագլուխ մողեսների սեռի մողես: Լայն մարմնով փոքր մողես է. երկ–յունը տարիքի հետ փոխվում է (2,5–6,5 *սմ*), պոչը գրեթե նույն երկ–յան է, չի ինքնահատվում: Մնվում է մրջյուններով և այլ մանր հոդվածոտանիներով:

ՀՀ–ում տարածված է Արմավիրի ու Արարատի մարզերի քարքարոտ ավազուտ. ու կավահող. կիսաանապատներում: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊՍԵՎԴՈՑԻԿԼՈՖԻՍ (Pseudocyclophis persicus), **պարսկական էյրենիս**, լորտուների ընտանիքի պսևդոցիկլոֆիս սեռի օձ: Մարմնի երկ–յունը տարիքի հետ փոխվում է (9–37 *սմ*), պոչը 4–5 անգամ մարմնից կարճ է: Մնվում է մանր անողնաշարներով: Մարդու և կենդանիների համար անվնաս է: Գրանցվել է ՀՀ Կարմիր գրքում:

ՊԱՐՍԿԱԿԱՆ (ԿՈՎԿԱՍՅԱՆ) ՍԿՅՈՒՌ (Sciurus anomalus), սկյուռանմանների ընտանիքի սկյուռներ սեռի կրծող կենդանի: Մարմնի երկ.՝ մինչև 260, պոչինը՝ 170 *սմ*: Պոչը խավոտ է, տակի մասում՝ 2 կողմի «սանրված»: Ապրում է հիմնականում հացաբերնու, կաղնու, եղրեմն՝ խառնանտառներում: Մնվում է ընկույզներով, կորիզներով, պտուղներով, հատապտուղներով ևն: Կուտակում է կերի մեծ պաշար: Մորթին ունի արդյունագործ. նշանակություն:

ՊԱՐՍԿԱՀԱՅԵՔ, **Պասհայք** (անվանումն առաջացել է սահման. Պաս ամրոցի անունից), նհնգ Մեծ Հայքում: Ընդգրկել է Կապուտան (Ուրմիա) լճի հս. և արմ. առափնյա շրջանները (շուրջ 11 հզ. *կմ*^{2}): Արշակունիների թագավորության օրոք՝ *Նոր Շիրական* բդեշխության հիմն. մասը: Ըստ *«Աշխարհացոյց»*–ի՝ Պ. ընդգրկել է 9 գվռ: Մ. թ. ա. IX դ–ի վերջից Պ–ի տարածքը մտել է *Վանի թագավորության* մեջ, որի անկումից հետո անցել է *Մարապատին*, ապա՝ վերջինիս հետ՝ Աքեմենյան Պարսկաստանին: Մ. թ. ա. II դ–ում *Արտաշես Ա*–ն մարերից հետ է գրավել Պ–ի տարածքը: 908–ից կազմել է *Վասպուրականի թագավորության* մի մասը, այնուհետև հաջորդաբար զավթել են տարբեր վաչկատուն ցեղեր: XVI դ–ի սկզբին Պ. անցել է Սեֆյան Պարսկաստանին: Թուրքմենչայի պայմանագրով (1828) Խոյի, Սալմաստի և Ուրմիայի գվռ–ների հայերի մեծ մասը բնակություն է հաստատել Արլ. Հայաստանում: Հայերի գաղթը շարունակվել է հետագայում (գերազանցապես՝ Թեհրան, 1940–ական թթ–ին նրանց զգալի մասը հայրենադարձել է): Շուրջ 3 հզ. հայ է բնակվում (2002) Ուրմիա ք–ում: Պ–ի տարածքը, բացառությամբ հվ–արմ. մի փոքր հատվածի, այժմ մտնում է ԻԻՀ կազմի մեջ:

ՊԱՐՍԿԵՐԵՆ, **ֆարսի, ֆարսերեն**, *պարսիկների* լեզուն, Իրանի պաշտոն. լեզուն: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի հնդիրան. ճյուղի հվ–արմ. իրան. խմբին: Տարբերում են Պ–ի 3 շրջան՝ հին, միջին կամ պհլ. (մ. թ. ա. III–VII դդ.), նոր (IX դ–ից սկսած): Գրի հիմքում արաբ. այբուբենն է:

ՊԱՐՍՈՆՆ (Parsons) Թոլկոթ (1902–1979), ամերիկացի սոցիոլոգ: Կառուցվածք–գործառն. վերլուծության գլխավոր ներկայացուցիչներից: Հայտնի են «Սոցիալական գործողության կառուցվածքը» (1937), «Սոցիալական համակարգ» (1952) աշխ–ները:

ՊԱՐՍՈՆՆ Չառլզ Ալջեռնոն (1854–1931), անգլիացի ճարտարագետ և արդյունաբերող: ԽՍՀՄ ԳԱ արտ. թղթ. անդամ (1931): Հայտնագործել է բազմաստիճան ռեակտիվ շոգետուրբինը (1884):

ՊԱՐՍՈՆՆ (լորդ Ռոս) Ուիլյամ (1800–1867), իռլանդացի աստղագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1852): 1845–ին հաստատել է մի շարք գալակտիկաների պարուրաձև կառուցվածքը՝ ժամանակի խոշորագույն (իր ձեռքով պատրաստած) աստղադիտակի միջոցով:

ՊԱՐՍՊԱՏՈՒՀԻՔ, **Պասպարունիք**, գվռ Վասպուրական նհնգ–ում: Ամենայն հավանականությամբ նախապես կազմել է Անձախիձոր (Անձահիձոր) գվռ–ի արլ. մասը: Հետագայում ավատատիր. հարաբերությունների խորացման հետևանքով առանձնացվել է որպես ինքնուրույն վտմ: Հետագայում ներառվել է Պարսկաստանի Ղաջարյաղի խանության կազմի մեջ:

ՊԱՐՍՈՒՄՅԱՆ Վահե (ծ. 1943), գեղանկարիչ: Հեղինակ է գրաֆիկ. լուծումներով գեղանկարչ. կոմպոզիցիաների («Տարանցում», 1975, ևն), որոնց բնորոշ են երկրչփ. գունաձևերը՝ հաճախ պարփակված սպիտակավուն գունեզրերով: 1973–ից՝ Փարիզում:

ՊԱՐՏԱՎ, **Բարդա**, ք. *Ուտիք*՝ նհնգ–ի Ուտի Առանձնակ գվռ–ում՝ Տրտու (Թարթառ) գետի ձախ ափին: 460–ական թթ–ին հիմնադրել է հայոց Արևելից կողմանց տեր Վաչեն՝ Պարսից Պերոզ արքայի հանձնարարությամբ: Արաբ. գերիշխանության ժամանակ եղել է *Արմինիա* կուսակա–

լության ռազմավարչ. կենտրոններից, այնտեղ հատվել է դրամ: Պ. հիմնովին ավերվել է XIII դ–ում՝ մոնղ. արշավանքների ժամանակ:

ՊԱՐՏԱՎԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ, գումարվել է *Պարտավ* ք–ում 768–ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս *Միռն Ա Բագրեւանդցու* նախաձեռնությամբ: Ընդունվել է 24 կանոն. 16–րդով արգելվել է ազգականների միջև ամուսնությունը՝ մինչև 4–րդ սերունդը, 24–րդով կանոնական են ճանաչվել Հին կտակարանի գրքերից 37–ը:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (իրավունք), քաղաքաց. իրավահարաբերություն, որի ուժով մի կողմը (պարտապան) մյուս կողմի (պարտատիրոջ) օգտին պարտավոր է կատարել որոշակի գործողություն կամ ձեռնպահ մնալ այն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պահանջելու պարտապանից կատարել իր Պ.:

ՊԱՐՏԱՏՈՒՄՄ, *արժեթուղթ*, որը հավաստում է դրա տիրապետողի իրավունքը՝ նրանում նախատեսված ժամկետում Պ. թողարկած անձից ստանալ նրա անվան. արժեքը կամ գույք. այլ համարժեք: Պ. տիրապետողին իրավունք է տալիս նաև նրա անվան. արժեքից ստանալ տոկոս կամ այլ գույք. իրավունքներ: Կարող են լինել ըստ ներկայացնողի կամ անվան.: Թողարկում են ԲՀ–ներն ու պետությունը:

ՊԱՐՏԵԶ, 1. գետ Հայկ. լ–աշխարհում, Բերդիկ (Փենյակ) գետի ձախ վտակը (Ճորոխի համակարգ): Երկ.՝ մոտ 125 *կմ*: Սկիզբ է առնում Մեծրաց (Չախիրբաբա) լ–ների համանուն գագաթից: Հոսում է բուսազուրկ, ժայռոտ լանջերի նեղ կիրճերով: Մնումը ձնաանձրևային է, հորդանում է գարնանը: Ննձրևների ժամանակ հաճախ սելավատար է:

2. **Պարտեզք**, ավան Տայք նհնգ–ի *Պարտիզաց փոր* գվո–ում, վերջինի անվանադիր կենտրոնը: XVII–XVIII դդ–ում տեղի հայերը հարևան գվո–ների իրենց հայրենակիցների նման բռնի մահմեդականացվել են: 1878–ին անցել է Ռուս. կայսրությանը, մտել Կարսի մարզի Օլթիի օկրուգի մեջ: Պ–ում վերահաստատվել են զգալի թվով հայեր և փոքրասիացի հույներ: 1914 և 1918–ին բնակչությունը հարկադրված գաղթել է: Մոսկվայի պայմանագրով (1921) Պ. տրվել է Թուրքիային:

ՊԱՐՏԵԶԱՊՈՒՐԱԿԱՅԻՆ ԱՐՎԵՍՏ, պարտեզներ, պուրակներ և այլ կանաչապատ տարածքներ ստեղծելու արվ–ը. խնդիրը լանդշաֆտի կոմպոզիցիոն կազմակերպումն է, բնության և գեղ. (ճարտ–յան, քանդակի, գեղանկարի) տարրերի ներդաշնակ ամբողջացումը: Հայկ. Պ. ա. սկզբնավորվել է դեռևս III հզ–ամյակում, հիմնականում՝ բնապատկեր. տիպի՝ «Սոսյաց անտառը» (մ. թ. ա. 2400), «Ծննդոց անտառը» (մ. թ. ա. III դ.), «Տաճար Մայրի» և «Խոսրովակերտ» (IV դ.) անտառ–արգելոցները: Պ. ա–ի արդի սկզբունքներով են ստեղծվել Երևանի «Հաղթանակ», Օղակաձև, Ծիծեռնակաբերդի և այլ զբոսայգիներ, «Ջրաշխարհ» հանգստի գոտին ևն: Օգտագործվում է (1970–ական թթ–ից) բույսերի ձևավոր խուզման եղանակը (հեղինակ՝ Ժիրայր Մարտիրոսյան):

ՊԱՐՏԵՐ (ֆրանս.՝ parterre), 1. հանդիսասրահի հատակի հարթությունը՝ հանդիսականների աթոռներով հանդերձ՝ սովորաբար բեմից ցածր: 2. Այգու կամ պուրակի (սովորաբար՝ հարթ տեղանքով) բացատը՝ ձևավորված սիզամարգերով, ծաղկանոցներով, ջրավազաններով, քանդակներով, շատրվաններով, թփուտների մայթեզրերով:

«ՊԱՐՏԷԶ», գր–մանկավարժ. շաբաթաթերթ (1903–04, Ալեքսանդրիա): Խմբ–տնօրենն՝ Միհրան Ասքանազյան:

«ՊԱՐՏԷԶ», մանկ., գր., պատմ. ամսագիր [1932–38, Պլովդիվ (Բուլղարիա)]: Խմբ–տնօրենն՝ Հակոբ Մարաշլյան:

«ՊԱՐՏԷԶ», մանկապատանեկան գր., մշակութ. պարբերաթերթ (1946–69, Մոսկվա): Խմբ–ներ՝ Ադրինե Տատրյան, Արմենուհի Էոզեր, Բագարատ Թևյան, Արսեն Ճանօղլու:

ՊԱՐՏԻԶԱԿ (այժմ՝ Բախչեջիկ), հայաբնակ գք Թուրքիայում՝ Իզմիթից (Նիկոմեդիա) 20 *կմ* հեռու՝ ծովախորշի հվ–արլ. ափին: Հիմնադրել են Սեբաստիայի նհնգ–ի Պարտիզակ գ–ից տեղափոխված հայերը XVI դ–ում: XX դ–ի սկզբին ուներ մոտ 10 հզ. հայ բն.: 1915–ին Պ–ի հայերը տեղահանվել և կոտորվել են: Ջարդից փրկված 3500 պարտիզակցի 1918–ին վերահաստատվել է Պ–ում, սակայն 1920–ին՝ հույն–թուրք. պատերազմի ժամանակ, կրկին տեղահանվել:

«ՊԱՐՏԻԶԱԿ», կրթամանկավարժ. կիսամյա հանդես [1909–14, Կ. Պոլիս (խմբագրվել է Պարտիզակում)]: Պարտիզակի գիշերօթիկ բարձրագույն վարժարանի ընթերցավարտից ընկերակցության հրտ–յուն: Խմբ.՝ Հովսեփ Տեր–Ստեփանյան:

ՊԱՐՏԻԶԱՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ ՀՄՊՈՒՄ, զինված պայքար գերմ. զորքերի դեմ՝ պատերազմի ժամանակ գրավված ԽՍՀՄ տարածքում: Թշնամու թիկունքում գործել են 1 մլն–ից ավելի պարտիզաններ և բազմահազար ընդհատակայիններ: Ռազմ. գործողությունները ղեկավարել է 1942–ի մայիսին ստեղծված Պարտիզան. շարժման կենտր. շտաբը (գործել է մինչև 1944–ի սկիզբը):

Հայ պարտիզաններն ընդգրկվել են *«Հաղթանակ»* ջոկատում, *Հայկական պարտիզանական ջոկատում*, № 10 հայկ. պարտիզան. ջոկատում, *Քառասունմեկերորդ պարտիզանական ջոկատում* և այլ միավորումներում: Պարտիզան. պատերազմի կանոններն ամրագրվել են միջազգ. համաձայնագրերով:

ՊԱՐՏԻԶԱՅ ՓՈՐ, **Պարտիզափոր**, գվո Տայք նհնգ–ում՝ Ուխտիք գետի Պարտեզ վտակի վերին և միջին հոսանքների շրջանում: Կենտրոնը՝ *Պարտեզ* ավան: VIII դ–ի վերջից մտել է Տայքում հաստատված Բագրատունիների տիրույթների մեջ: XVI–XVII դդ–ի թուրք–պարսկ. պատերազմների հետևանքով գվո–ն անցել է Թուրքիային, որից հետո հայերը զանգվածաբար հեռացել են իրենց բնօրրանից կամ բռնի մահմեդականացվել: 1878–ին Պ. փ–ի հս. և արլ. մեծագույն մասն անցել է Ռուսաստանին՝ մտնելով Կարսի մարզի Օլթիի օկրուգի մեջ, իսկ արմ–ը կազմել է Էրզրումի նհնգ–ի Նարիմանի գվոկ–ի մի մասը: 1913–ին ռուս. հատվածի մի շարք գյուղերում վերաբնակվել են շուրջ 150 տուն (1200–1500 բն.) հայեր: 1914 և 1918–ին թուրք. հարձակումները հարկադրել են տեղի հայ և հույն բնակչությանը հեռանալ Պ. փ–ից:

ՊԱՐՏԻԶՊԱՆՅԱՆ Խաչատուր (1809–1856), մանկավարժ, մշակույթի գործիչ: 1842–46–ին՝ Նիկողայոս *Պալյանի* խորհրդատու Փարիզում: Դասավանդել է Կ. Պոլսի Մայր եկեղեցու ուսումնարանում, Սկյուտարի ճեմարանում: Պ–ին աշակերտել են Գրիգոր *Օտյանը* և ուրիշ ականավոր դեմքեր:

ՊԱՐՏԻԶՊԱՆՅԱՆ Պարույր (1887–1932), գեղանկարիչ: 1923–ից՝ Կահիրեում: Կ. Պոլսի գեղատեսիլ վայրերն ու փողոցները պատկերող Պ–ի գեղանկարչ. գործերը հազեցած են արլ. մթն–ով, թանձր գույներով («Փողոցի տեսարան» ևն):

ՊԱՐՏԻԶՈՒՆԻ (Թաղևոսյան) Վաչե Զոհրաբի (1915–1997), գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1957), պրոֆ. (1957): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1965): Հեղինակ է «Խաչատուր Աբովյան» (1952), «Մուրացան» (1956), «Վահան Տերյան» (1968), «Ավ. Իսահակյանը և Վ. Տերյանը» (1975), «Տերյանի կենսապատումը» (1984), «Վահան Տերյանի հետ» (1989), «Գրականության ուժն ու հմայքը» (1963), «Տաղանդի ուժը» (1977), «Պայծառ համաստեղություն» (1987) և այլ աշխ–ների:

ՊԱՐՏԻՏՈՒՐ (իտալ.՝ partitura – բաժանում, բաշխում), բազմաձայն երաժշտ. ստեղծագործության (գործիք., խմբերգ. կամ վոկալ–գործիք.) բոլոր ձայների համատեղ նոտագրումը, որտեղ յուրաքանչյուր գործիքի կամ ձայնի պարտիան գրվում է առանձին տողով:

ՊԱՒԼՈՍ Ֆրիդրիխ Յոհան Յակոբ Վիլհելմ (1791–1841), ֆրանսիացի բնախույզ, բժիշկ, աշխարհագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1816): 1811–ին հանքաբան Մ. ֆոն Էնգելհարդի հետ երկրբ. ու բուսաբ. հետազոտություններ է կատարել Ղրիմում և Կովկասում: 1829–ի սեպտ. 27–ին Պ. Խաչատուր *Աբովյանի*, 2 հայ գյուղացու և 2 ռուս զինվորի հետ 1–ին անգամ բարձրացել է Մեծ Մասիսի, իսկ հոկտ. 27–ին՝ Փոքր Մասիսի գագաթը: Վերադարձի ճանապարհին ուսումնասիրել է Դվինի ավերակները:

ՊԱՐՑԻԱԼ ՃՆՇՈՒՄ (լատ.՝ Partialis – մասնակի), **մասնական ճնշում**, իդեալ. գազ. խառնուրդի բաղադրիչի ճնշումը, որ այն կունենար, եթե միայնակ զբաղեցներ խառնուրդի ամբողջ ծավալը:

ՊԱՐՈՒՅՐ ՀԱՅԿԱԶՆ, **Պրոերեսիոս** (276–368), հայազգի հռետոր և փիլ.: Աթենքի ճարտասան. դպրոցի ղեկ.: Պ. Հ–ի մասին տեղեկություններ է հաղորդել նրա կենսագիր Եվնապիոսը: Պ. Հ–ի բազմաթիվ աշակերտների թվում էին Հռոմի ապագա կայսր Հուլիանոսը, Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Նազիանզացին և ուր.: Կենդանության օրոք Հռոմում կանգնեցվել է նրա արձանը՝ «Աշխարհի թագուհի Հռոմը՝ ճարտասանության թագավորին» մակագրությամբ:

ՊԱՐՈՒՅՐ ՍԿԱՅՈՐԴԻ (ծ. թ. անհտ–մ. թ. ա. մոտ 630), Աքսանազյան թագավորության հիմնադիրը (673): Հուսակի կամ Սկայորդի իշխանի որդին: *Մովսես Խորենացին* (ըստ Մար Աբաս Կատինայի) գրում է, որ Պ. Ս. Ասորեստանի դեմ պատերազմում օգնել է *Մարապտանի* թագավոր Վարբակեսին (Կիաքսար), որի համար վերջինս նրան ճանաչել է թագավոր: Պ. Ս–ու մահից հետո գահը ժառանգել է որդին՝ *Հրայան*:

ՊԱՐՈՒՅՐՈՒԹՅՈՒՆ, տարր. մասնիկի վիճակի բնութագիր. մասնիկի սպինի պրոյեկցիան է նրա շարժման ուղղությամբ, ներմուծվել է լույսի արագությանը մոտ կամ լույսի արագությամբ շարժվող

տարր. մասնիկները նկարագրելու համար: Եթե սպինն ուղղված է մասնիկի շարժմանը հակառակ ուղղությամբ, ապա Պ. բացասական է («ձախ»):

ՊԱՐՈՆԲԵԿՅԱՆ Հովսեփ, 1880-ական թթ-ի դրամատուրգ: Հեղինակ է կենցաղ. կատակերգությունների («Վրեժ», «Քամու բերածը քամին կը տանէ», «Հարստացած աղքատ» ևն, 1884–86, ձեռագրերի մեծ մասը կորել է), որտեղ նկարագրել է հայ քաղաք. միջավայրի բարքերը:

ՊԱՐՈՒՄՆ, վուշե կամ կիսավուշե խիտ, ծանր, հաստ, ամուր գործվածք: Օգտագործվել է առագաստներ կարելու համար: Հատուկ բաղադրության նյութերով ներծծված Պ. օգտագործվում է բրեզենտի, կոշիկների վերնամասի, հատուկ արտահագուստների արտադր-յան համար:

ՊԱՐՈՒՐԱԳԵՐ, հարթության վրա կետի շուրջ (հարթ Պ., օր.՝ արքիմեդ., հիպերբոլ., լոգարիթմ. պարույրները) կամ առանցքի շուրջ (տարած. Պ., օր.՝ պտուտակագիծը) պտտվող կորեր:

ՊԱՐՈՒՐԱԿ, պտուտակագծով հերթագայող ելուստներ և փոսիկներ պտտման մարմնի մակերևույթին: Պ-ային միացման, պտուտակ., ինչպես նաև ատամնապտուտակ. փոխանցման որդնյակ. կապակցման հիմն. տարրն է:

ՊԱՐՈՒՐԱՉԵՎ ԳԱԼԱԿՏԻԿԱՆԵՐ (պայման. նշանը՝ S), գալակտիկաների հիմն. տեսակներից է (գալակտիկաների թվի մինչև 50 %-ը): Պ. գ-ի զանգվածը հասնում է մինչև $\approx 10^{12}$ Արեգակի զանգվածի: Յուրաքանչյուր Պ. գ. ունի միջուկ, խտացված սկավառակ՝ պարուրաձև ճյուղավորումներով, և գնդային բաղադրիչ, որը թուլանում է դեպի ծայրամասերը (գալակտիկ. պսակ): Պ. գ-ի աստղերն ու միջաստղ. նյութը պտտվում են նրա միջուկի շուրջը:

ՊԱՐՈՒՐԱՅՈՒՄ քրոմոսոմների, բջջի կիսման ժամանակ քրոմոսոմների կարճացումն ու խտացումը: Պայմանավորված է քրոմոսոմները կազմող պարուրաձև գալարված նուկլեոպրոտեիդային թելիկների՝ քրոմոսոմների քայլի փոքրացմամբ և տրամագծի մեծացմամբ: Յուրաքանչյուր քրոմոսոմի համար պարույրների գալարների քանակը հաստատուն է:

ՊԱՐՕԴՈՆՏԻՏ, տես *Հարապատանաբորբ*:

ՊԱՅԻՖԻԶՄ (լատ.՝ pacificus, < pax – խաղաղություն և facere – անել), հակապատերազմ. շարժում, որի մասնակիցները դատապարտում են բոլոր պատերազմները, նույնիսկ՝ ազգ-ազատագր.: Որոշ պացիֆիստներ և պացիֆիստ. կազմյուններ ընդգրկվել են *Խաղաղության կողմնակիցների շարժման* մեջ:

ՊԱՈՒԵԼ (Powell) Սեսիլ Ֆրանկ (1903–1969), անգլիացի ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1958): Զարգացրել է (այլոց հետ) միջուկ. լուսանկարչ. էմուլսիաների մեթոդը, տիեզ. ճառագայթներում հայտնաբերել (1947) *պի-մեզոնները*: Միջուկ. հետազոտությունների եվրոպ. կենտրոնի ստեղծման նախաձեռնողներից է: Նոբելյան մրց. (1950):

ՊԱՈՒԼ (Paul) Հերման (1846–1921), գերմանացի լեզվաբան-գրականագետ: Հետազոտել է գերմ. լեզուների պատմությունը: Հեղինակ է գերմ-ի բառարանի և քերականի, ընդհ. լեզվաբ. խնդիրներին, գերմ. ազգագրությանը վրաբերող աշխ-ների:

ՊԱՈՒԼԻ (Pauli) Վոլֆգանգ Էռնստ (1900–1958), շվեյցարացի հրեա ֆիզիկոս-տեսաբան: Քվանտ. մեխանիկայի և դաշտի ռելյատիվիստ. քվանտ. տեսության հիմնադիրներից: Չնակերպել է (1925) իր անունով կոչված սկզբունք՝ *Պաուլիի սկզբունքը*: *Սպինը* ներառել է քվանտ. մեխանիկայի ընդհ. պատկերացումների մեջ: Կանխատեսել է (1930) *նեյտրինո*-*յի* գոյությունը: Աշխ-ները վերաբերում են հարաբերականության տեսության, մագնիսականության, միջուկ. ուժերի մեզոնային տեսության և այլ հարցերի: Նոբելյան մրց. (1945):

ՊԱՈՒԼԻՒ ՊԱՐԱՄԱԳՆԵՏԻԶՄ, մագնիսացման առաջացումը մետաղներում և այլասերված կիսահաղորդիչներում՝ արտաքին մագնիս. դաշտի միացման դեպքում, որը պայմանավորված է դաշտի ուղղությամբ որոշակի թվով սպին. մագնիս. մոմենտների վերակողմնորոշմամբ: Տեսականորեն բացատրել է Վ. *Պաուլին* (1927):

ՊԱՈՒԼԻՒ ՄԿԶԲՈՒՆՔ, *Պաուլիի արգելման սկզբունք*, բնության հիմնարար օրենքներից, ըստ որի՝ քվանտ. համակարգում 2 (կամ ավելի) կիսաամբողջ սպինով նույնական մասնիկներ չեն կարող միաժամանակ լինել միևնույն վիճակում: Չնակերպել է Վ. *Պաուլին* (1925):

ՊԱՈՒԼՅՈՒՍ (Paulus) Ֆրիդրիխ (1890–1957), գերմանացի զորապետ, գեն-ֆլդմ. (1943): «Բարբարոսա պլան» ռազմագործողության գլխ. կազմակերպիչներից: 1942-ի հունվ-ից՝ 6-րդ բանակի հրամ. Արլ. ռազմաճակատում. գլխավորել է ընդհանուր հարձակումը Ստալինգրադի ուղղությամբ: 1943-ի հունվ. 31-ին իր բանակի մի մասով գերի է հանձնվել: *Նյուրնբերգյան դատավարության* ժամանակ հանդես է եկել որպես մեղադրող կողմի վկա: 1953-ից ապրել է ԴԴԵՀՀ-ում:

ՊԱՈՒԼՍ (Pauls) Ռայմոնդս (ծ. 1936), լատիշ կոմպոզիտոր, դաշնակահար: ԽՍՀՄ ժող. արտիստ (1985): Հեղինակ է բալետների («Կուբայական մեղեդիներ», 1963, ևն), մյուզիքլների («Քույր Քերրի», «Շեռլոք Հոլմս», երկուսն էլ՝ 1979), բալետների, ջազ. կոմպոզիցիաների, երգերի («Դեղին տերևներ», «Մաեստրո», «Միլիոն ալ վարդեր» ևն), թատրոնի ու կինոյի երաժշտության, էստրադ. և այլ երկերի:

Լատվ. ԽՍՀ Պետ. (1977), ՀամԼԿԵՄ (1981) մրց-ներ, ՀՀ «Պատվո» շքանշան (2013):

ՊԱՈՒՄԳԱՐՏՆԵՐ (Paumgartner) Բեռնհարդ (1887–1971), ավստրիացի դիրիժոր, երաժշտագետ, կոմպոզիտոր: «Մոցարտ-նվագախմբի» հիմնադիրը (1929), 1917–53-ին (ընդմիջումով)՝ *«Մոցարտեում»*-ի տնօրեն (1953–59-ին՝ նախագահ), 1960-ից՝ Զալցբուրգի փառատոների նախագահ: Ուսումնասիրությունները վերաբերում են Վ. Ա. Մոցարտին, Ֆ. Շուբերտին, *բարոկկոյի* շրջանի կոմպոզիտորներին: Հեղինակ է օպերաների, բալետների, նվագախմբային գործերի:

ՊԱՈՒՍՏՈՎՍԿԻ Կոնստանտին Գեորգիևիչ (1892–1968), ռուս գրող: Քնար. արձակի վարպետներից: Հեղինակ է «Կարա բողազ» (1932, հայ.՝ 1936), «Շառլ Լոնսևիլի վիճակը» (1933, հայ.՝ 1936), «Կոլխիդա» (1934), «Սև ծով» (1936), «Հյուսիսային պատմվածք» (1938, հայ.՝ 1978, կինոնկար՝ 1960) վիպակների, «Իսահակ Լևիտան» (1937, հայ.՝ 1963), «Հին տան բնակիչները» (1941), «Ամռան օրեր» (1937, հայ.՝ 1986) պատմվածքների ժող-ի, «Տարաս Շևչենկո» (1939) և այլ կենսագր. երկերի, «Պատմություն կյանքի մասին» (գիրք 1–6, 1945–63, հայ.՝ 1-ին գիրքը՝ «Հեռավոր տարիներ», 1962) ինքնակենսագր. էպոպեայի: 1923-ին Պ. գործուղվել է Հայաստան, գրել «Հազարամյակների փոշի» ակնարկը, որը հետագայում ավելի ընդարձակել և զետեղել է «Թռիչք դեպի հարավ» (1959–60) վիպաշարում: Հայ. հրատարակվել են նաև «Լճային ռազմաճակատ» (1936), «Ոսկե վարդը» (1963), «Ոսկե շղթա: Անհանգրվան ճանապարհ» (1964) վեպերը, «Պատմվածքներ» (1958), «Սպիտակ ծիածանը» (1965) ժող-ները:

ՊԱՖԼԱԳՈՆԻԱ, պատմ. մարզ Փոքր Ասիայի հս-ում՝ Սև ծովի հվ. ափին (այժմ՝ Թուրքիայի Սինոպ և Քասթամոնու իլերի տարածքում): Մ. թ. ա. 107-ին անցել է *Միհրդատ VI* **Եվպատորին:** Միհրդատյան 3-րդ պատերազմից (մ. թ. ա. 74–63) հետո Պ-ի ծովափնյա շրջանները մտել են Հռոմ. Պոնտոս և Բութանիա պրովինցիայի մեջ (Լուկուլլոսի Հայաստան կատարած արշավանքի ժամանակ հռոմեացիներին դաշնակցել է նաև Պ-ի զորքը): 395-ին մտել է Բյուզանդիայի կազմի մեջ:

ՊԱՔՍԻՆՈՒ (Paxinou) Կատինա (1900–1973), հույն դերասանուհի: 1932–40-ին և 1955-ից՝ Աթենքի ազգ. թատրոնի դերասանուհի: Խաղացել է հինհուն., նաև Հ. Իբսենի, Յ. Օ'Նիլի, Ֆ. Գարսիա Լորկայի և ժամանակակից հույն դրամատուրգների պիեսներում: Նկարահանվել է «Ում մահն է գուժում զանգը» (1943) և այլ ֆիլմերում: «Օսկար» մրց. (1944):

ՊԱՖՖԵՆՀՈԼՑ (Paffenholtz) Կոնստանտին Նիկոլաևիչ (1893–1983), գերմանացի երկրաբան: ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1943): ՀԽՍՀ և Ադրբ. ԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1963): Աշխ-ները վերաբերում են Կովկասի երկրբ-յան շերտագրությանը, տեկտոնիկայի, մագմատիզմի, հրաբխականության, երկրաշարժագիտ-յան, ջրաերկրբ-յան, քարտեզագրման, օգտ. հանածոների խնդիրներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

ՊԵԱՆՈ (Peano) Ջուզեպպե (1858–1932), իտալացի մաթեմատիկոս: Աշխ-ները վերաբերում են մաթ-ի և մաթ. անալիզի հիմն. հասկացություններին: Բնական թվերի շարքի աքսիոմատիկայի (Պ-ի աքսիոմներ) հեղինակն է: Ստեղծել է (1903) արհեստ. լեզու՝ լատինո-սինե-ֆլեքսիոնեն:

ՊԵԳԱՍ (լատ.՝ Pegasus), հասարական. համաստեղություն՝ Մողես, Կարապ, Աղվես, Դելֆին, Փոքր Ձի, Ջրհոս, Ձկներ և Անդրոմեդա համաստեղությունների միջև: Պ-ում է գալակտիկաների ամենամոտիկ կուտակումներից մեկը:

«ՊԵԳԱՍԵԱՆ ԹՌՉՆԻԿ», ազգ., հաս., գր., կրթ. հանդես (1863–66, Կ. Պոլիս): Խմբ-ներ՝ Գրիգորիս Ալեաթճյան, Արմենակ Հայկունի: Նյութերի որոշ մասը՝ հայատառ թուրք.:

ՊԵԳԱՍՈՍ, *Պեգաս* (Pegasus), թևավոր ձի հուն. դից-յան մեջ: Ծնվել է *Պերսևսի* սպանած Գորգոնա Մեդուզայի իրանից: Հելիկոն լ-ան վրա Պ-ի սմբակի հարվածից առաջացել է Հիպոկրենա աղբյուրը, որից ոգեշնչվել են բանաստեղծները: Պ-ի կերպարը բանաստեղծ. ոգեշնչման խորհրդանիշ է («թամբել Պեգասոսին»):

ՊԵԳԻ (Péguy) Շառլ (1873–1914), ֆրանսիացի բանաստեղծ, հրապարակախոս: Հեղինակ է «Միստերիա Ժաննա դ'Արկի գթասրտության մասին» (1910), «Միստերիա սրբակյաց քարոզիչների մասին»

(1912), «Եվա» (1913) պոեմների: Զոհվել է ռազմաճակատում:

ՊԵԴԵՐՍԵՆ (Pedersen) Հոլգեր (1867–1953), դանիացի լեզվաբան, հայագետ: Սշակել է լեզուների նոստրատիկ ազգակցության տեսությունը: Հեղինակ է «Հայոց լեզվի պատմություն» (1902, հայ.՝ «Նպաստ մը հայ լեզուի պատմութեան», 1904), «Հայերէնն եւ դրացի լեզուները» (1904, հայ.՝ 1905–06, «ՀԱ»), «Հին հայերէնի ցուցական դերանունները» (1905, հայ.՝ 1907) աշխ-ների, «Հայերէնի դիրքը» (1924, հայ.՝ 1929, «ՀԱ») հոդվածի:

ՊԵԴԵՐՍԵՆ Չառլզ (1904–1989), նորվեգացի քիմիկոս: 1922-ից՝ ԱՄՆ-ում: Աշխ-ները վերաբերում են մակրոտարացիկլ. միացությունների (կրաուն-եթերներ) քիմիային: Նոբելյան մրց. (1987, Դ. *Կրամի* և Ժ. Մ. *Լենի* հետ):

ՊԵԴԻ (բապեդի, հս. սուտու), բանտու խմբի ժողդ. ՀԱՀ-ում (հիմնականում՝ Լիմպոպո պրովինցիայում): Թվաքանակը՝ 4,2 մլն (2001): Ապրում են նաև Զիմբաբվեում (150 հզ.), Բոտսևանում (15 հզ.): Լեզուն՝ հս. սուտու: Հավատացյալները հիմնականում ավանդ. հավատալիքների հետևորդ են, կան նաև քրիստոնյաներ:

ՊԵԴՈԳԵՆԵԶ (< հուն. pais, սեռ. հոլ.՝ paidos – երեխա և ... *գենեզ*), կուսածնության ձև, որի դեպքում նոր սերնդին սկիզբ տվող չբեղմնավորված ձվաբջիջները զարգանում են դեռևս թրթուրի մարմնում: Բնորոշ է մի շարք անողնաշարների (որոշ ճանճերի, ծով. խեցգետնակերպների):

ՊԵԴՈՄՈՐՖՈԶ (< հուն. pais, սեռ. հոլ.՝ paidos – երեխա և morphe – ձև, տեսակ), օրգանիզմի էվոլյուցիայի եղանակ. բնորոշվում է հասուն փուլի կորստով և համապատասխանաբար՝ օնտոգենեզի կարճացմամբ, որի դեպքում վերջինը դառնում է այն փուլը, որը նախկինում համարվում էր թրթուր: Հնարավոր է այն օրգանիզմներում, որոնց թրթուրները ձեռք են բերել բազմացման հնարավորություն (տես *Նեոտենիա*): Պ-ի ճանապարհով առաջացել են պոչավոր երկկենցաղների և միջատների որոշ խմբեր ևն:

ՊԵԴՈՖԻԼԻԱ (< հուն. pais, սեռ. հոլ.՝ paidos – երեխա և ... *ֆիլիա*), սեռ. աղավաղման ձև, սեռ. հակում երեխաների հանդեպ:

ՊԵԴՐԵԼ (Pedrell) Ֆելիպե (1841–1922), իսպանացի կոմպոզիտոր, երաժշտագետ: Իսպ. նոր կոմպոզիտոր. դպրոցի հիմնադիրներից: Իսպ. արդի երաժշտագիտությունն սկզբնավորվել է Պ-ի աշխ-ներով («Իսպանական ժողովրդական երգեր», հ. 1–4, 1918–19, 2 հրտ., հ. 1–2, 1936): Հեղինակ է օպերաների («Պիրենեյներ», 1891, ևն), ծրագր-սիմֆ. և այլ երկերի, կանտատների, խմբերգերի, եկեղեց. երաժշտության, ռոմանսների, երգերի:

ՊԵԶԱՋՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ, երկսեռ ուս. հաստատություն: Հիմնադրվել է 1908-ին Կ. Պոլսում՝ Պ. Պեզազյանի բարերարությամբ: Գործել է միջնակարգ դպրոցի ծրագրով: Ունեցել է նաև գիշերօթիկ բաժին և մանկապարտեզ: Սովորել են ծնողազուրկ և կարիքավոր ընտանիքների երեխաներ: Լեզուներից բացի բոլոր առարկաները դասավանդվել են ֆրանս.: 1926-ից՝ լիցեյ, 1942-ին բարձր դասարանները փակվել են, 1955-ին դպրոցն իր գույքով նվիրվել է հայկ. համայնքին:

ՊԵԶԱՋՅԱՆ Ալեքսան (1837–1913), մանկավարժ, բնագետ: 1872-ին Այնթապում հիմնադրել է դպրոց, 1876-ին՝ *Կեդրոնական Թուրքիո քոլեջը* և մինչև 3-ը պաշտոնավարել է այնտեղ: Հեղինակ է «Տարերք ընագիտութեան» (1901) դասագրքի:

ՊԵԶԱՋՅԱՆ Հարություն Պողոսի, Ղազեզ (Գազազ) **Հարություն ամիրա** (1771–1834), պետ., հաս. գործիչ, բարերար: 1821-ից՝ թուրք. արքունի դրամահատարանի կառավարիչ: Եղել է սուլթան Մահմուդ II-ի անձն. սեղանավորն ու խորհրդականը: Մեծ դեր է կատարել Թուրքիայի պետ. կյանքում և Կ. Պոլսի հայկ. համայնքում (այդ շրջանն անվանվել է «Պեզճյան դար»). ջանացել է միավորել Կ. Պոլսի առաքել. և կաթոլիկ համայնքները, նպաստել է ենիչերիների կորպուսը վերացնելուն (1826), սուլթանի միջամտությամբ վերահաստատել է ՀԱԵ իրավունքները Երուսաղեմում: Պ-ի նախաձեռնությամբ և միջոցներով Կ. Պոլսում կառուցվել են պատրիարքարանի նոր շենքը (1823), Մայր եկեղեցին (1829), Սբ Փրկիչ ազգ. հիվանդանոցը (1833), 7 վարժարան, վերակառուցվել է Մայր դպրատունը (1830, կոչվել է նրա անունով՝ *Պեզճյան մայր վարժարան*), հրատարակվել են գրքեր ևն:

ՊԵԶԱՋՅԱՆ ՄԱՅՐ ՎԱՐԺԱՐԱՆ, հիմնադրվել է 1719-ին Կ. Պոլսի Սկյուտար թաղամասում՝ պատրիարք *Հովհաննես Կոլոտ Բաղիշեցու* նախաձեռնությամբ՝ բարձրագույն ուս. հաստատության ծրագրով: 1741-ին տեղափոխվել է Գում Գափու՝ պատրիարքարանին կից, և անվանվել Մայր դպրատուն (տնօրեն՝ *Պաղտրաաար Դպիր*): 1826-ի հրդեհի ժամանակ շենքն այրվել է՝ պատրիարքարանի և եկեղեցու հետ: 1830-ին վերակառուցել է Հարություն *Պեզճյանը*, իսկ վարժարանը, ի պատիվ նրա, վերանվանվել է Պ. մ. վ-ի: Ունեցել է 3 բաժին՝ կարիքավոր երեխաների դպրատուն, դպրության վարժոց, երաժշտանոց: Վարժարանին կից բացվել է նաև ընծայարան՝ հոգևորականներ պատրաստելու համար, 1840-ին՝ Լուսավորչ. աղջկաց դպրոցը: 1846-ին ստեղծվել է վարժարանի շրջանավարտների ընթերցասիրաց ընկ-ը, մտնդ. (շուրջ 1000 ձեռագիր), ունեցել է տպարան: XX դ-ի սկզբից՝ երկսեռ: Այժմ գործում է միջնակարգ դպրոցի ծրագրով:

«ՊԵԺՈ–ՍԻԹՐՈՅԵՆ» (Peugeot–Citroën), ֆրանս. ավտոմոբիլաշին. կոնցեռն: Արտադրում է մարդատար, սպորտ., մրցարշավ., հատուկ ավտոմոբիլներ, մոտոցիկլետներ, հեծանիվներ, շարժիչներ: Հիմնադրվել է 1896-ին՝ «Պեժո ավտոմոբիլ» անվամբ, 1976-ին կլանել է «Սիթրոյեն» ընկ-ը, 1991–2016-ին անվանվել PSA (Peugeot Citroën Automobiles), 2017-ին ձեռք է բերել գերմ. «Օփել» ընկ-յան բաժնետոմսերը: Կենտրոնատեղին՝ Փարիզում:

ՊԵԼԱԳՐԱ (իտալ.՝ pelle agra – անհարթ մաշկ), հիվանդություն՝ պայմանավորված օրգանիզմում նիկոտինաթթվի և B խմբի որոշ այլ վիտամինների անբավարարությամբ, դրսևորվում է մաշկի և լորձաթաղանթների ախտահարմամբ, լուծով, նյարդահոգեկան խանգարումներով:

ՊԵԼԱՄԻԴՆԵՐ (Pelamis), 1. պերկեսաձկների ընտանիքի ձկների սեռ: Երկ.՝ մինչև 85 *սմ*, կ. զ.՝ մինչև 7 *կգ*: Հայտնի է 4 տեսակ՝ Ատլանտ., Հնդ. և Խաղաղ օվկ-ներում, 1-ը՝ Սև ծովում: Արդյունագործ. ձուկ է: 2. Ծով. օձերի ընտանիքի սողունների սեռ:

ՊԵԼԵՆԳ (հոլ.՝ peiling), **ուղղորոշման անկյուն**, 1. որևէ օբյեկտի ուղղությունը դիտորդից. չափվում է միջօրեականի (իսկական, մագնիս. կամ կողմնացուցային) հարթության և դիտորդի տեղով (օր.՝ կողմնացույցի կենտրոն) և օբյեկտով անցնող ուղղահայաց հարթության կազմած անկյունով: Պ-ի հաշվարկը կատարվում է անկյուն. աստիճաններով՝ միջօրեականի հս. ուղղությունից՝ ժամասլաքի ուղղությամբ: 2. Ինքնաթիռների թռիչք. դասավորությունն առաջնորդող ինքնաթիռի նկատմամբ. աջ հետ (աջ Պ.), ձախ հետ (ձախ Պ.), նույն բարձր-յան վրա կամ վերև (ներքև):

ՊԵԼԵՆԳԱՏՈՐ, **ուղղորոշիչ**, լուսատուների կամ արտաքին այլ կողմնորոշիչների (ափ, լողացող օբյեկտ ևն) ուղղության որոշման սարք: Պ-ով կատարվում է *պելենգի* հաշվարկը: Տարբերում են տեսող., օպտիկ., ձայն., ռադիո- Պ-ներ:

ՊԵԼՇԵ (Pelše) Արվիդ Յանովիչ (1899–1983), լատիշ կուս-պետ. գործիչ: Լատվ. ԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1946): Սոց. աշխ. հերոս (1969, 1979): 1941–59-ին՝ Լատվիայի կոմկուսի ԿԿ քարտուղար, 1959–66-ին՝ 1-ին քարտուղար: 1966-ից՝ Քաղբյուրոյի անդամ և ԽՄԿԿ ԿԿ-ին կից կուս. վերահսկողության կոմիտեի նախագահ:

ՊԵԼԵՊՈՆԵՍ, թ-կղզի և պատմաաշխարհագր. մարզ (21,4 հզ. *կմ*^{2}) Հվ. Հունաստանում: Բարձր.՝ մինչև 2404 *մ*: Մայրցամաքին միանում է Կորնթոսի պարանոցով: Պ-ում են Սպարտա, Կորնթոս, Պատրա ք-ները, Միկենե, Օլիմպիա և այլ ք-ների ավերակներ:

ՊԵԼՈՊՈՆԵՍՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, Հին Հունաստանում *Պելոպոնեսի* պոլիսների (բացի Արգոսից և մասամբ՝ Աքայայից) միավորումը՝ *Սպարտայի* գլխավորությամբ: Ձևավորվել է մ. թ. ա. VI դ–ից: *Պելոպոնեսյան պատերազմում* (մ. թ. ա. 431–404) հաղթելուց հետո դարձել է համահուն. կազմ-յուն: Թերեի դեմ պատերազմում Սպարտայի պարտվելուց (մ. թ. ա. 362) հետո Պ. մ. կազմալուծվել է:

ՊԵԼՈՊՈՆԵՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ Մ. Թ. Ա. 431–404, հինհուն. պոլիսների 2 մեծ խմբավորումների՝ Դելոսյան կամ Աթեն. ծովային 1-ին միության (Աթենքի գլխավորությամբ) և *Պելոպոնեսյան միության* (Սպարտայի գլխավորությամբ) միջև: Ընդգրկել է ողջ Հունաստանը, Հվ. Իտալիայի և Սիկիլիայի հուն. քաղաքները: Ավարտվել է Աթենքի պարտությամբ, որտեղ հաստատվել է «երեսուն տիրանների» օլիգարխ. վարչակարգը:

ՊԵԼՈՊՍ, փոքրասիական արքա *Տանտալոսի* որդին հուն. դից-յան մեջ: Տանտալոսը աստվածներին խնջույքի է հրավիրել և մատուցել իր իսկ սպանած Պ-ի միսը: Զայրացած աստվածները կենդանացրել են Պ-ին: Դառնալով Հելիդի արքայադստեր ամուսինը՝ Պ. Հելիդում իշխանություն է ստացել և ընդարձակել այն մինչև Հվ. Հունաստան, որի «Պելոպոնես» անվանումը կապված է նրա հետ:

ՊԵԼՈՏԱՍ (Pelotas), ք. Բրազիլիայի Ռիու Գրանդի դու Սուլ նահց-ում: Բն.՝ 347 հզ. (2010): Գղտ-յան շրջանի կենտրոն է:

ՊԵԼՏԻԵԻ ԷՖԵԿՏ, երկու տարբեր հաղորդիչների հպատեղով (զոդվածք) հոսանք անցնելիս ջերմության անջատման կամ կլանման երևույթը: Ջերմության քանակն ուղիղ համեմատական է հոսանքի խտությանը: Կիրառում են ջերմաէլ.

սառնարաններում և թերմոստատներում: Հայտնագործել է (1834) ֆրանսիացի ֆիզիկոս Ժ. Պելտիեն (1785–1845):

ՊԵԿԱԼՈՆԳԱՆ (Pekalongan), ք–նվինգստ Ինդոնեզիայում: Բն.՝ 265,5 հզ. (2010): Կան ավանդ. գործվածքի արտադր–յան ձեռն–ներ:

ՊԵԿԱՆ, ընկուզազգիների ընտանիքի կաթիա ցեղի ծառ: Բարձր.՝ 50 *մ*: Ամեց–նում են ուտելի սերմերի համար (պա–րունակում են 70 % ձեթ)՝ Հս. Ամերիկայի հվ–արլ–ում, ինչպես նաև Կովկասում, Ուկրաինայում և Միջին Ասիայում:

ՊԵԿԻՆ (չին.՝ Բեյջզին, բառացի՝ հս. մայ–րաքաղաք), *Չինաստանի* մայրաքաղաքը: Բն.՝ 21, 5 մլն (2014): Մերձակա շրջաննե–րի հետ առանձնացված է որպես Կենտր. ենթակայության ինքնուրույն վոմ: Երկրի տնտ., գիտ. և մշակութ. կենտրոնն է, տրանսպորտ. խոշոր հանգույց (արա–գընթաց ավտոմայրուղի, երկթղ.), որտեղ խաչվում են 4 երկթղ., ավտոմայրուղի–ներ, ավելի քան 100 օդ. ուղիներ: Ունի օդանավակայան (Շոուդան), գործում է մետրո: Զարգացած են ծանր արդ–յան, տրանսպորտ., էլեկտրատեխ., քիմվե–րամշակման, դեղագործ., սննդի և այլ արդ–յան ճյուղերը, զբոսաշրջությունը, գեղ. արհեստագործությունը: Էլեկտրոն. արդ–յան և համակարգիչների, նրանց առանձին մասերի, շարժ. հեռախոսների արտադր–յան խոշոր կենտրոն է: Գործում են ՉԺՀ ԳԱ–ն, համալսարաններ, բուհեր, թատրոններ, Չինաստանի պատմության, Գուգուն թանգարանները, պատկերա–սրահը, Սյոյ Բեյհունի տուն–թանգարանը:

Մ. թ. ա. I հզ–ամյակ–մ. թ. X դ–ի տա–րեգրություններում հիշատակվում է Ցզի անունով: Հետագայում բազմիցս անվա–նափոխվել է: 1421–ին անվանվել է Բեյ–ցզին: XIII դ.–1927–ին (բացի 1368–1421–ը) եղել է Չինաստանի մայրաքաղաքը: 1368–1421 և 1928–49–ին՝ Բեյպին, 1949–ից՝ ՉԺՀ մայրաքաղաքը: Պ. բաղկացած է Ներքին և Արտաքին ք–ներից: Հնագույն Ներքին ք–ը ներառում է Կայսեր. ք–ի համալիրը (դարպասներով հվ. պատը և Տյանան–մին հրապարակը), որի կորիզը «Փակ քաղաքն» է՝ կայսեր. պալատի համալիրի հետ (XV դ–ի 1–ին կես, այժմ՝ Գուգուն թանգարան): Ներքին ք–ի ամբողջ մասը միավորված է պալատների, տաճարների և այլ կառույցների խիստ համակարգով: Կայսեր. ք–ի համալիրում է նաև Թայ–մյաո տաճարը (1420, վերակառուցվել է 1541–ին), «Երեք ծովեր» զբոսայգին, այդ թվում՝ Բեյհայը (համանուն կղզում և լճի ափին, 1271) ևն: Ներքին ք–ում են «Երկնքի տաճարը» (1420–1530, վերակառուցվել է XVIII–XIX դդ–ում) և Ամառ. կայսեր. պա–լատը (1750–64, 1886–95). «Փակ քաղաքի» հետ Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում են: Պ–ի վարչաքաղ. կենտրոնը Տյանանմին հրապարակն է. այստեղ է Չինաստանի Ազգ. թանգարանը: 1970–ի վերջին և 1990–ական թթ–ին կառուցվել են բազմաբնակարան և հաս. շենքեր:

ՊԵԿԻՆՅԱՆ ԲԱԴԵՐ, մսատու ցեղ: Բուծ–վել է Չինաստանում մոտ 300 տարի առաջ: Փետրավորումը՝ սպիտակ՝ բաց դե–ղին գունավորմամբ: Բաղաքլորների կ. զ.՝ 3,2–4,2, էգերինը՝ 3,4–3,9 *կգ*, 50–60–օրա–կան ճտերինը՝ 2,2–2,5 *կգ*: Տարեկան միջին ձվատվությունը՝ 130–140:

ՊԵԿՈՍ, գետ ԱՄՆ–ի հվ–արմ–ում, Ռիո Գրանդի ձախ վտակը: Երկ.՝ 1215 *մ*, ավա–զանը՝ 101 հզ. *կմ*^{2}, ակունքում ջրի միջին ծախսը՝ 8 *մ*^{3}/*վ*, առլգն՝ երբեմն 3000 *մ*^{3}/*վ*: Կա ջրամբար: Ափին է Կաուսբադ ք–ը:

ՊԵԿՏԻՆԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ (հուն.՝ pektos – ամուր կապակցված, սառած), բարձրմոլ. բազմաշաքարներ, պարունակվում են ցամաք. բույսերում (հատկապես՝ հա–ղարջենու, գետնամորու, խնձորենու պտուղներում): Առաջանում են գալակ–տուրանաթթվի մնացորդներից, որտեղ կարբօքսիլ խմբերի մի մասը էսթերաց–վում է մեթիլ. խմբերով: Նպաստում են բույսերի հյուսվածքներում տուրգորի վիճակի պահպանմանը, բարձրաց–նում երաշտակայունությունը, մրգերի և բանջարեղենի դիմացկունությունը պահեստավորման ժամանակ: Ստանում են խնձորի կնջեղի, շաքարի ճակնդեղի մզուկից: Օգտագործում են սննդի և դե–ղագործ. արդ–յան մեջ՝ որպես դոնդողա–գոյացնող նյութ:

ՊԵԿՏՈՒՍ, (կորեերեն), Բայտոուշան (չին.), հրաբուխ Կորեայի ԺԴՀ–ում՝ Չի–նաստանի սահմանի մոտ: Առլգն կետը՝ Մանջուրաչին. լ–ներ (2750 *մ*): Վերջին ժայթքումը՝ 1903–ին:

ՊԵՂԻՈՆ, լ. Միջին Հունաստանում (Թեսալիա): Բարձր.՝ 1618 *մ*: Ըստ հուն. առասպելների՝ հսկաները փորձել են Պ. և հարևան Օսսա լ. դնել Օլիմպոսի (կամ Օսսան և Օլիմպոսը Պ–ի) վրա՝ երկինք հասնելու համար: «Օսսան Պեղիոնի վրա դնել» արտահայտությունն ունի «վիթխա–րի գործ» կատարելու, երբեմն՝ հսկայա–կան ջանքերով փոքր արդյունքի հասնելու հեգն. իմաստ: Արգոնավորդների առաս–պելում «Արգո» նավը պատրաստվել է Պ–ի վրա աճող անտառի փայտից: Պ–ի գագաթի քարայրում իբր ապրել է Հե–րակլեսի բարեկամ, շատ հերոսների (այդ թվում՝ Աքիլլեսի) դաստիարակ *Քիրոն* կենտավրոսը: Պ–ի լանջին է եղել Զևսի սրբարանը:

ՊԵՂՈՒՄՆԵՐ հնագիտական, պատմ. ուսումնասիրությունների նպատակով հնագիտ. հուշարձանների որոնումներ: Պ–ով ուսումնասիրում են մշակութ. շերտը (դամբարաններում՝ վերին հողաշերտը և դամբարանափոսի լիցքը), կառույցները, հայտնաբերված նյութերը, մարդկանց ու կենդանիների ոսկորները, բույսերի մնացորդները ևն: Պ. *հնագիտության* և *հնէաբանության* հիմքն են, կարևոր բաղադրամաս՝ երկրբ–յան, ճարտ–յան պատմության ևնի ուսումնասիրման հա–մար: Արժեքավոր պեղածոները պահվում են թանգարաններում և պետ. այլ պա–հոցներում:

ՊԵՄԲԱ, բուստ. կղզի Հնդ. օվկ–ում՝ Աֆ–րիկայի արլ. ափի մոտ: Տանզանիայի տիրույթ: Տարածքը՝ 984 *կմ*^{2}, բարձր.՝ 99 *մ*: Զբաղվում են արևադարձ. երկրագոր–ծությամբ: Գլխ. քաղաքները՝ Չակե–Չակե և Վետե:

ՊԵՄՁԱ, *չեչաքար*, թեթև (ջրում չլուծվող) հրաբխ. լեռնապար: Առաջանում է գա–զով հագեցած մածուցիկ մագմաներից, որոնցում ժայթքման ժամանակ ճնշման անկման հետևանքով գազերը խիստ ըն–դարձակվում են, և լավան վերափոխվում է սպունգանման զանգվածի: Ծակոտկե–նությունը՝ 60 % և ավելի, խտ.՝ 2–2,3 *գ/սմ*^{3}, կարծր.՝ 5–6,5: Օգտագործվում են որպես լցանյութ՝ պեմզաբետոնի, և հղկանյութ՝ ռետինի, պլաստմասսաների, երեսհար–դարման միջոցների արտադր–յան մեջ և արդ–յան այլ ճյուղերում: ՀՀ հարուստ է Պ–ի հանքավայրերով (Պեմզաշեն, Անի–պեմզա, Իրինդ գ–եր):

ՊԵՄՁԱՇԵՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԱԽՈՒՄԲ, միջնադար. հուշարձանախումբ (V–VI դդ.) ՀՀ Շիրակի մարզի Պեմզաշեն գ–ում: Խո–շոր միանավ բազիլիկից (V դ.) պահպան–վել են ստորին պատերը և բազմաստի–ճան որմնախարիսխը: Հվ–ում կանգուն է փոքր միանավ, թաղածածկ եկեղեցին (VI դ.), որի խորանը ներառված է պատերի ուղղանկյուն հատակագծի մեջ: Դրանց միջև խաչաձև գմբեթավոր եկեղեցին է (VI դ.), որի խորանարդաձև ծավալը պսակ–ված է տրոմպ. փոխանցումով ութանիստ գմբեթով: Պեմզաշենի տարածքում է Առաքելոց վանքի (XI դ.) եկեղեցին, հս–արլ–ում հին գերեզմանատունն է՝ XIII–XIV դդ–ի խաչքարերով:

ՊԵՅԶԱՍ (Բեհզադ) Հովհաննես (Ումետ) Պողոսի (1809–1874), գեղանկարիչ: Ձևա–վորել է Շրաղանի, Իոլմաբահչեի պալատ–ների դահլիճները (Կ. Պոլիս): Հեղինակ է դիմանկարների («Զարուհի–Մաքրուհի», 1868, ևն), բնանկարների («Նիագարայի ջրվեժը» ևն), թեմատիկ («Վիեննայի գրա–վումը թուրքերի կողմից»), աստվածաշնչ. թեմաներով («Խորհրդավոր ընթրիք», 1853, «Գեթսեմանի այգում», 1872, երկուսն էլ՝ Սբ Խաչ) պատկերների ևն:

ՊԵՅԼԵՐՅԱՆ (Նագգաշյան) Մառի (1880–1915), խմբ., մանկավարժ, հաս. գործիչ: *«Արտևմիա»* հանդեսի հիմնադիր–խմբ. (1902–03, Ալեքսանդրիա): Հեղինակ է հրապարակախոս., մանկավարժ., գր. ստեղծագործությունների («Ռէպի վեր», 1914): Մեծ եղեռնի զոհ:

ՊԵՅԿՈ Նիկոլայ Իվանովիչ (1916–1995), ռուս. կոմպոզիտոր: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1964): Հեղինակ է օպերաների («Իվան արքայի գիշերը», 1982, ևն), «Ժաննա դ'Արկ» (1957) բալետի, սիմ–ֆոնիաների (1946–86), օրատորիայի, գործիք. կոնցերտների, կամեր–գործիք. և այլ երկերի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1947, 1951):

ՊԵՅՎԵ (Peive) Ալեքսանդր Վոլդեմարովիչ (1909–1985), լատիշ երկրաբան: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1964): Սոց. աշխ. հերոս (1979): Յ. Վ. *Պեյվեի* եղբայրը: Խորք. իջվածքնե–րի ուսմունքի հիմնադիրը: Եվրասիայի տեկտ. քարտեզների ստեղծողներից:

ԽՍՀՄ (1946, 1969), ՌԴ (1995, հետմա–հու) Պետ. մրց–ներ:

ՊԵՅՎԵ Յան Վոլդեմարովիչ (1906–1976), բույսերի ֆիզիոլոգիայի բնագավառի լա–տիշ գիտնական: Լատվիայի ԳԱ ակադ. (1946, նախագահ՝ 1951–59–ին), ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1966): Սոց. աշխ. հերոս (1969): Ա. Վ. *Պեյվեի* եղբայրը: Հետազոտել է միկրո–օրգանիզմների դերը բույսերի սնուցման մեջ և ազոտի սևեռումը պալարաբակտե–րիաներով: Եղել է Լատվիայի ՆԽ նա–խագահ (1959–62): Լենինյան մրց. (1964):

ՊԵՆԴԵՐԵՑԿԻ (Penderecki) Քշիշտոֆ (ծ. 1933), լեհ կոմպոզիտոր, դիրիժոր, ման–կավարժ: ԵՊԿ պատվ. պրոֆ. (2008): Լեհ. *ավանգարդիզմի* («Եղերերգ՝ Հիրոսիմայի զոհերի հիշատակին»՝ լար. նվագախմբի համար, 1960, ևն) ներկայացուցիչ: Հեղի–նակ է օպերաների («Լյուդենի սատա–նաները», 1969, «Կորուսյալ դրախտ», 1978, «Սև դիմակ», 1986, ևն), պաշտա–մունք. երկերի («Զարչարանքներ ըստ Ղուկասի», 1965, «Լեհական ռեքվիեմ», 1986, ևն), սիմֆոնիաների (1973–2007), կոնցերտների, կվարտետների, խմբերգ.

(«Սաղմոս 3», նվիրված է Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին), կամեր. և այլ գործերի: Համերգներով բազմիցս հանդես է եկել ՀՀ-ում: «Էմմի» մրց. (1995, 1996), ՀՀ «Պատվո» շքանշան (2009), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալ (2013):

ՊԵՆԵԼՈՊԵ (Penelope), *Ոդիսևսի* կինը հուն. դից-յան մեջ, որը 20 տարի սպասել է Տրոյայից ամուսնու վերադարձին: Պ-ի կերպարը ամուսն. հավատարմության խորհրդանիշ է:

ՊԵՆԶԱ, ք. ՌԴ-ում, համանուն մարզի վարչ. կենտրոնը՝ Սուրա գետի ափին: Բն.՝ 507,0 հզ. (2010): Երկթղ. հանգույց է: Զարգացած են մեքենաշինությունը, քիմ., թղթի-ցելյուլոզի, թեթև, սննդի արդ-յան ճյուղերը: Ունի բուհեր, թատրոններ, բուսաբ. այգի, թանգարաններ: Հիմնադրվել է 1663-ին: Պ-ում են Պետրոպավլովսկի (XVIII դ.), Սպասո-Պրեոբրաժենսկու (XVIII–XIX դդ.) տաճարները:

ՊԵՆԶԱՅԻ ՄԱՐԶ, վում ՌԴ Մերձվոլգյան դաշն. օկրուգում: Տարածքը՝ 43,4 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1379,8 հզ. (2009), քաղաք. բն.՝ 66,5 %: Ունի 27 շրջան, 11 քաղաք, 16 քտա: Վարչ. կենտրոնը՝ *Պենզա*: Տարածքի մեծ մասն զբաղեցնում են Մերձվոլգյան բարձրյան արլ. լանջերը (բարձր.՝ 324 *մ*): Գլխ. գետը՝ Սուրա:

ՊԵՆԶԻԱՍ, Փենզիաս (Penzias), Առնո Ալան (ծ. 1933), ամերիկացի ռադիո- և աստղաֆիզիկոս: Ռ. Վ. *Վիլսոնի* հետ հայտնաբերել է (1965) տիեզ. միկրոալիք. ֆոնային ճառագայթումը (մնացորդ. ճառագայթում), որով հաստատվել է տաք տիեզերքի վարկածը: Նոբելյան մրց. (1978, Ռ. Վ. Վիլսոնի հետ):

ՊԵՆՆԻՆՅԱՆ ԼԵՌՆԵՐ (Pennine Chain), Մեծ Բրիտանիայում: Երկ.՝ 250 *կմ*, բարձր.՝ 893 *մ*: Նախալեռներում կա ածխի հանքավայր (Յորքշիրյան ածխային ավազան): Գործում է Պիկ Դիստրիկտ ազգ. պարկը:

ՊԵՆՆԻՑԻԼ, անկատար սնկերի դասի ցեղ: Հայտնի է շուրջ 250 տեսակ՝ հողում, բորբոսի տեսքով՝ սննդամթերքի վրա (փչացնում է մթերքը): Առաջացնում է հակաբիոտիկներ (օր.՝ *պենիցիլին*), օգտագործվում է պանրագործության մեջ:

ՊԵՆԻՑԻԼԻՆԱԶ, ֆերմենտ, որը *պենիցիլինները* ճեղքում է ոչ ակտիվ նյութերի: Արտադրում են մանրէները, որոնք ունեն կայունություն՝ պենիցիլինային հակաբիոտիկների ազդեցության հանդեպ:

ՊԵՆԻՑԻԼԻՆՆԵՐ, **հակաբիոտիկներ**, որոնք առաջանում են պենիցիլներում, սնկերում կամ ստանում են կիսասինթետիկ եղանակով: Հայտնագործել է Ա. *Ֆլեմինգը* 1929-ին: Գործն. բժշկության մեջ ներդրվել են 1943–44-ին՝ հիմնականում Հ. Ու. Ֆլորիի և Է. Բ. Չեյնի (Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում) աշխ-ների շնորհիվ: Ունեն հակամանրէային ազդեցության լայն շրջանակ, կարող են առաջացնել ալերգիա:

ՊԵՆՆ (Penck) Ալբրեխտ (1858–1945), գերմանացի երկրաձևաբան և աշխարհագետ: Վ. *Պենկի* հայրը: Մշակել է կլիմաների երկրաձևաբան. դասակարգումը, Է. Բրյուկների հետ՝ հին սառցապատման հայեցակարգը (1909, առանձնացրել է սառցապատման 4 դարաշրջան):

ՊԵՆՆ Վալտեր (1888–1923), գերմանացի երկրաբան և երկրաձևաբան, գերմ. երկրաձևաբան. դպրոցի հիմնադիրներից: Ա. *Պենկի* որդին: Աշխ-ները վերաբերում են Անդերի, Հավայան կղզիների, Ապենինների, Սիցիլիայի, Փոքր Ասիայի, Միջին Եվրոպայի և այլ շրջանների երկրաձևաբանությանն ու երկրբ-յանը: Զարգացրել է ռելիեֆի ձևավորման տեսությունը:

ՊԵՆՆԿԻՅԱՆ (Պենկյան) Արշակ Խաչատուրի (1867–1923), թատեր. գործիչ, դերասան, ռեժ.: 1882-ից հանդես է եկել Կ. Պոլսում, 1908-ից հիմնականում խաղացել է օպերետներում (Տ. Չուխաճյանի «Արիֆ», Ե. Օտյանի, Մ. Կյուրճյանի «Չարշըլը Արթին աղա», ևն): Պ-ի ռեժ. և դերասան. գլուխգործոցը Տ. Չուխաճյանի «Լերլերիջի Հորհոր աղան» է (Հոր-հոր աղա՝ Պ.):

ՊԵՆՆԿԻՅԱՆ (Պենկյան) Սերովբե Հակոբի (1835/38–1900/03), դերասան, ռեժ., թատեր. գործիչ: 1861-ից գործել է *«Արևելյան թատրոն»*-ում, 1863-ից՝ Ստեփան Էքշյանի և այլ թատերախմբերում, 1868-ից՝ Հակոբ *Վարդովյանի* թատրոնում: Կ. Պոլսում հիմնադրել է պրոֆեսիոնալ օպերետ. խումբ (1878), բեմադրել հայկ. և թարգմ. օպերետներ: Դերերից են՝ Բել (Ռ. Սետեֆճյանի «Հայկ դյուցազն»), Շապուհ (Մ. Պեշիկթաշլյանի «Արշակ Բ», բեմ.՝ Պ-ի, 1899, Փարիզ) ևն:

ՊԵՆՏԱԳՈՆ (անգլ.՝ pentagon – հնգանկյուն), ԱՄՆ ՊՆ հնգանկյուն շենքը Վաշինգտոնի մոտ: Փխր. իմաստով՝ ԱՄՆ-ի ռազմ. գերատեսչություն:

ՊԵՆՏԱՆՆԵՐ, հագեցած ացիկլիկ ածխաջրածիններ, C_5H_{12}, անգույն հեղուկներ են՝ նորմալ պենտան ($t_{եռ.}$՝ 36,1°C), իզոպենտան ($t_{եռ.}$՝ 27,9°C) և նեոպենտան: Պարունակվում են նավթում, թերթաքարային խեժում: Մտնում են շարժիչ. վառելանյութերի բաղադրության մեջ: Կիրառվում են որպես լուծիչներ: Իզոպենտանից ստանում են *իզոպրեն*:

ՊԵՆՏԱՊԼԱՍՏ, **պենտոն**, [–$OCH_2C(CH_2Cl)_2CH_2$–]$_n$, ջերմապլաստիկ պոլիմեր, պինդ, անգույն նյութ է: Ստացվում է երկքլորմեթիլօքսացիկլորուտանի պոլիմերմամբ: Կայուն է շատ լուծիչների, թթուների նկատմամբ: Կիրառվում է բարձր ճշգրտությամբ մեքենաշին. դետալների արտադր-յան մեջ և քիմ. ապարատների հակակոռոզային պաշտպ-յան համար:

ՊԵՆՏԱՏՈՆԻԿԱ, **հնգատոն** (< հուն. pente – հինգ և tonus – տոն), 5 աստիճանից բաղկացած անկիսատոն օկտավ. ձայնակարգ: Հնչյունները դասավորվում են հաջորդ. մաքուր կվինտաներով, աստիճաններից յուրաքանչյուրը կարող է լինել տոնիկա: Տարածված է շոտլանդացիների, հունգարների, բաշկիրների, բուրյաթների, հատկապես՝ վիետնամցիների, չին և այլ ժողդ-ների երաժշտության մեջ:

ՊԵՆՏՈՂ [< հուն. pentt – հինգ և (էլեկտր) (ոդ)], էլեկտրոն. լամպ 5 էլեկտրոդներով՝ կաթոդ, ուղղորդիչ, էկրանավորող ու պաշտպանիչ ցանցեր և անոդ: Օգտագործվում է որպես ընդունիչ-ուժեղարար կամ գեներատոր. լամպ՝ մինչև մի քանի տասնյակ *ՄՀց* հաճախականությունների դեպքում:

ՊԵՆՏՈԶՆԵՐ, միաշաքարներ, որոնց մոլեները պարունակում են ածխածնի 5 ատոմ (արբինոզ, ռիբոզ, քսիլոզ ևն):

ՊԵՆՖԻԼԴ (Penfield) Ուայլդեր Գրեյվս (1891–1976), կանադացի նյարդաբան, ժամանակակից նյարդավիրաբուժության հիմնադիրներից: ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1958): Աշխ-ները վերաբերում են ֆունկցիաների տեղակայմանը, էպիլեպսիայի, գլխուղեղի ուռուցքների ախտորոշմանն ու բուժմանը:

ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆ Մկրտիչ Ռափայելի (1828–1868), բանաստեղծ, մանկավարժ, թատեր. գործիչ: Արևմտահայ մշտ. թատրոնի հիմնադիրը: Դասավանդել է Կ. Պոլսի Թարգմանչաց, Լուսավորչյան, Հռիփսիմյանց վարժարաններում: Հեղինակ է «Կոռնակ», «Արշակ», «Վահան», «Վահէ» պատմ. ողբերգությունների, «Մատենագրութիւնք»-ի (1870, 1871), «Երեք քաջեր» (1885) կատակերգության, «Տաղեր» (1903), «Տաղք եւ թատերերգութիւնք» (1917) ժող-ների: Հրատարակվել են նաև «Մկրտիչ Պէշիկթաշլեանի քերթուածներն ու ճառերը» (1904, առաջաբանը՝ Ա. Չոպանյանի), «Մկրտիչ Պէշիկթաշլեանի թատրերգութիւնները» (1909) ժող-ները: Պ-ի հայրենասիր. բանաստեղծությունների հիման վրա ստեղծվել են երգեր («Եղբայր եմք մեք», «Գարուն»): Պ. կատարելության է հասցրել հայկ. ռոմանտիկ. բանաստեղծությունը:

ՊԵՇԿՅՈՆԹՈՒՐՅԱՆ Գարեգին (1868–1891), բանաստեղծ: «Ասպարեզ» (Խարբերդ) ամսագրի խմբ-հրտ.: Մամուլի էջերում պահպանվել են մոտ մեկ տասնյակ բանաստեղծություններ, որոնցից «Սրինգը» հետդարյանական շրջանի հայ քնարերգության ընտիր նմուշներից է, որի համար երաժշտություն է գրել ինքը՝ հեղինակը:

ՊԵՈՐԻԱ, (Peoria), ք. ԱՄՆ-ի Իլինոյս նահագում՝ համանուն գետի ափին: Բն.՝ 115, 828 (2014): Զարգացած է սև մետաղագործությունը:

ՊԵՉ (Pécs), ք. Հունգարիայի հվ-արմ-ում, Բարանյա մեդիենի վարչ. կենտրոնը: Բն.՝ 155 հզ. (2010): Արդյունահանում են ածուխ և ուրան: Ունի համալսարան (1367), թատրոն, թանգարան: Հիմնադրվել է մոտ 2 հզ. տարի առաջ: Պահպանվել են տաճարը (XI–XIX դդ.), ռոման. ոճի «Ներքին եկեղեցին» (XI դ.), Բելվարոշ (XVI դ.) եկեղեցին: Վաղքրիստ. դամբարանը Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՊԵՉ (Peć), ք. Սերբիայում՝ Պեչական Բստրիցա գետի ափին՝ Կոսովո և Մետոխիա երկրամասում: Բն.՝ 83 հզ. (2008): Պ-ում է պատրիարքարանի համալիրը (XIII–XVI դդ-ի եկեղեցիներ, միջնադարի սերբ. զարդարվ-ի և կերպարվ-ի որմնանկարների հարուստ հավաքածուներով):

ՊԵՉԵՆԵԳՆԵՐ, թյուրքերի, սարմատ. և ուգրոֆինն. ցեղերի միություն անդրվոլգյան տափաստաններում VIII–IX դդ-ում: Ասպատակել են ռուս. հողերը: 1036-ին Կիևի մոտ Յարոսլավ Իմաստունը պարտության է մատնել Պ-ին, որոնց մի մասը գաղթել է Հունգարիա:

ՊԵՉՈՐԱ, գետ ՌԴ եվրոպ. մասի հս-արլ-ում: Երկ.՝ 1809 *կմ*, ավազանը՝ 322 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 3400 *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Հս. Ուրալից, թափվում Բարենցի ծովի համանուն խորշը: Վտակներն են Ուսանը և Ինսմանը: Լուղարկելի է, կանոնավոր նավարկելի է մինչև Տրոիցկո-Պեչորսկ ք-ը: Ծով. նավարկության համար՝ մինչև Նարյան Մար: Գլխ. նվինգատ-ներն են Նարյան Մարը, Պեչորան, Տրոիցկո-Պեչորսկը: Կա ձկնաբուծարան:

ՊԵՉՈՐԱՅԻ ԾՈՎԱԽՈՐՉ, Բարենցի ծովի ծոցը ՌԴ-ում: Երկ.՝ 100 *կմ*, լայն.՝ 40–120 *կմ*, խոր.՝ 6 *մ*: Ծովախորշ է թափվում *Պեչորա* գետը:

ՊԵՉՈՐԱՅԻ ՅԱՏՐԱՎԱՅԻՐ, Պեչորա գետի ավազանում՝ Ուրալի և Թիմանի բլրաշարի միջև (Կոմիի Հանրապետության և Նենեց. ԻՄ–ի)։ Կան ածխի և նավթի հանքավայրեր։

ՊԵՊԱՆՅԱՆ Բորիս Ժորայի (ծ. 1950), դերասան։ ՀՀ վաստ. արտիստ (2003)։ 1972–ից՝ ԵԿԹԻ–ի դերասան (Հովիկ՝ Ժ. Անանյանի «Տաքսի–տաքսի», Մանուկ աղա՝ Հ. Պարոնյանի «Մենապատիվ մուրացկաններ», Սորիանո՝ Է. դե Ֆիլիպպոյի «Ֆիլումենա Մարտուրանո», Մալվոլիո՝ Վ. Շեքսպիրի «Տասներկուերորդ գիշեր», ևն)։ Նկարահանվել է «Լիրիկական երթ» (Հայֆիլմ), «Ոստիկանության սերժանտը» (Լենֆիլմ), «Ճակատագրի զերիները» (հեռուստասերիալ) և այլ ֆիլմերում։

ՀԹԳՄ «Արտավազդ» (2002), միջազգ. թատեր. փառատոնի Մեծ (2002, Իրան), «Թատերական Լոռի» միջազգ. փառատոնի Մեծ (2014, 2016) մրց–ներ, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2017)։

ՊԵՊԵՆՆԵՐ, մանր, դեղնադարչնագույն կլորավուն գունակ. բծեր, համաչափ տեղադրված են մարմնի բաց հատվածների, ավելի հաճախ՝ դեմքի, ձեռքերի վրա։ Ի հայտ են գալիս արևի (գարնանը), երբեմն՝ ռենտգեն. ճառագայթների և քիմ. գրգռիչների ազդեցությունից։ Գոյանում է մաշկի մակերես. շերտերում ***մելանինի*** օջախ. ավելացումից։

ՊԵՊՍԻՆ (հուն.՝ pepsis – մարսողություն), ողնաշարավորների սպիտակուցները ճեղքող մարսող. ֆերմենտ։ Արտադրվում է ստամոքսում՝ ոչ ակտիվ պեպսինոգենի ձևով և ակտիվանում աղաթթվի ազդեցությամբ։ Օգտագործվում է բժշկության, պանրագործության և այլ բնագավառներում։

ՊԵՊՏԻԴԱԶՆԵՐ, ֆերմենտներ, որոնք կատալիզում են սպիտակուցների և պեպտիդների ամինային կամ կարբօքսիլ. ծայրերից մեկական ամինաթթվի անջատումը։ Մասնակցում են մարդու և կենդանիների մարսողությանը։ Տես նաև ***Ամինապեպտիդազներ***, ***Կարբօքսիպեպտիդազներ***։

ՊԵՊՏԻԴԱՅԻՆ ԿԱՊ, (–CO–NH–), պեպտիդների և սպիտակուցների մոլ–ներում ամինաթթվի ամինախումբը մյուսի կարբօքսիլային խմբի հետ միացնող քիմ. կապը։

ՊԵՊՏԻԴՆԵՐ, օրգ. նյութեր, որոնք կազմված են պեպտիդային կապով կապված ամինաթթվային մնացորդներից։ Տարբերում են երկ–, եռ– և բազմապեպտիդներ։ Կենդանի օրգանիզմներում Պ. սինթեզվում են ամինաթթուներից կամ սպիտակուցների նյութափոխանակության արգասիքներ են։ Պ. են մի շարք կենսաբանորեն ակտիվ բնական նյութեր, որոշ հորմոններ (ինսուլին, վազոպրեսին, օքսիտոցին), հակաբիոտիկներ (գրամիցիդին ևն)։ Բազմաթիվ Պ. պարունակում են այնպիսի ամինաթթուներ, որոնք չեն հանդիպում սպիտակուցներում։ Ունեն ամֆոտեր հատկություններ։

ՊԵՊՏԻԶԱՑՈՒՄ, հիմնականում սուսպենզիաներում և զոլերում պինդ մասնիկների կցորդման արդյունքում առաջացած ագրեգատների քայքայումը։ ***Կոագուլացման*** հակառակ երևույթը։ Կարևոր նշանակություն ունի ջրամաքրման, հանք. հումքի հարստացման, տեղումների զտման, սննդամթերքի արտադր–յան մեջ։

ՊԵՐԵ (Perret) Օգյուստ (1874–1954), ֆրանսիացի ճարտ.։ Առաջիններից է կիրառել երկաթբետոնե կառուցվածքները։ Արդ. մեթոդները և շին–յան միօրինականացումն օգտագործել է Հավր ք–ի վերակառուցման (1947–ից) ժամանակ։

ՊԵՐԵՆ (Perrin) Ժան Բատիստ (1870–1942), ֆրանսիացի ֆիզիկոս։ ԽՍՀՄ ԳԱ պատվ. անդամ (1929)։ 1940–ից՝ ԱՄՆ–ում։ Ապացուցել է, որ կաթոդ. ճառագայթները բացաս. լիցքավորված մասնիկների հոսք են։ Փորձով դիտարկել է ***բրոունյան շարժումը*** (1908–13), ապացուցել Էյնշտեյն–Սմոլուխովսկու տեսությունը և վերջնականապես ապացուցել մոլ–ների գոյության իսկությունը։ Ուսումնասիրել է նաև բարակ թաղանթները, ռենտգեն. ճառագայթումը, ռադիոակտիվությունը ևն։ Նոբելյան մրց. (1926)։

ՊԵՌԼ Մարտին Լյուիս (1927–2014), ամերիկացի ֆիզիկոս։ Աշխ–ները վերաբերում են տարր. մասնիկների ֆիզիկային։ 1935–ին հայտնաբերել է τ–լեպտոնը և նրա հետ կապված նեյտրինոյի նոր տիպ։ Նոբելյան մրց. (1995, Ֆ. ***Ռայնեսի*** հետ)։

ՊԵՌԼԻՄ (Perlis), նահանգ Մալայզիայում։ Տարածքը՝ 795 *կմ*^{2}, բն.՝ 231,5 հզ. (2010)։ Տնտ–յան հիմն. ճյուղերը՝ գղտ–յուն և ձկնաբուծություն։

ՊԵՌԼԻՏ (ֆրանս.՝ perlite, < perle – մարգարիտ) (հանքաբան.), հրաբխ. ապակու տարատեսակ՝ կազմված մինչև 3–5 % կապված ջրից՝ մանր, խտացված–պատճավոր, մարգարտափայլով փոքր գնդիկների ձևով։ Մանրացված Պ. 900–1100°C տաքացնելիս փքվում (ուռչում) է, ծավալը մեծանում է մինչև 10–20 անգամ։ Փքված Պ. որպես լցանյութ օգտագործվում է թեթև բետոնում, ջերմամեկուսիչներում ևն։

ՊԵՌՆԱՄԲՈՒԿՈՒ (Pernambuco), նահանգ Բրազիլիայի հս–արլ–ում։ Տարածքը՝ 98,1 հզ. *կմ*^{2}, բն.՝ 8,8 մլն (2010)։ Վարչ. կենտրոնը՝ Ռեսիֆի։

ՊԵՌՈ (Perrot) Ժյուլ Ժոզեֆ (1810–1892), բալետի ֆրանսիացի արտիստ, բալետմայստեր։ Ռոմանտիկ. ուղղության հիմնադիրներից բալետում։ 1830–35–ին՝ Փարիզի օպերայի արտիստ (Պիեռ Դրենգուար, Մեֆիստոֆել՝ Չ. Պունիի «Էսմերալդա», «Ֆաուստ»), 1834–48–ին՝ Լոնդոնի թագավոր. թատրոնի բալետմայստեր (Չ. Պունիի «Ունդինա», 1843, «Կատարինա», 1846, ևն)։

ՊԵՌՈ (Perrault) Կլոդ (1613–1688), ֆրանսիացի ճարտ., ճարտ–յան տեսաբան։ Շ. ***Պերոյի*** եղբայրը։ Հեղինակ է Լուվրի հանդիսավոր և խիստ ոճի սյունաշարով արլ. ճակատի (1667–74) և Փարիզի աստղադիտարանի շենքի (1667–72)։ Վիտրիվիուսի «Տաս գիրք ճարտարապետության մասին» աշխ–յան Պ–ի թարգմ–յունը (1673) երկար տարիներ համարվել է լավագույնը։

ՊԵՌՈ Շառլ (1628–1703), ֆրանսիացի գրող։ Կ. ***Պերոյի*** եղբայրը։ Պ–ին հռչակ են բերել «Սագ մայրիկիս հեքիաթները…» (1697, այդ թվում՝ «Կոշկավոր կատուն», «Կապտամորուսը», «Մոխրոտը», «Մատնաչափիկը», «Կարմիր գլխարկը» և այլ հեքիաթներ) ժող–ը։ Հեղինակ է պալատ. նրբագեղ ոճով այլաբան. պոեմների, ուղերձների, նաև «Հների ու նորերի զուգահեռներ արվեստի և գիտության հարցերում» (հ. 1–4, 1688–97, երկխոսություններ) աշխ–յան։ Հայ. հրատարակվել է Պ–ի «Հեքիաթներ» (1980) ժող–ը։

ՊԵՌՈՒ (Perroux) Ֆրանսուա (1903–1987), ֆրանսիացի տնտեսագետ։ Կապիտալիզմի ժամանակ տնտ. աճի նպատակը համարել է սոցիալ. ներդաշնակության («համընդհանուր տնտեսություն») հասնելը, որտեղ տնտ. կազմակերպման հիմն. սկզբունքը կլինի առյգն խնայողության պահանջը։ «Զարգացման բևեռների» և «աճի կենտրոնների» տեսության հեղինակներից։

ՊԵՍԿԱՐԱ, ք. Իտալիայի հվ–ում, Աբրուցի մարզի և համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը։ Բն.՝ 129,5 հզ. (2010)։ Նվինգստ՝ Ադրիատիկ ծովի ափին։

ՊԵՍՈԿՈՎ Վասիլի Միխայլովիչ (1930–2013), ռուս գրող, լրագրող։ Հեղինակ է «Քայլեր ցողի վրայով» (1963), «Իմ մանկության գետակը» (1978), «Դեգերումներ» (1991) ակնարկների ժող–ների, «Փակուղի տայգայում» (1990) վավերագր. վիպակի, «Այլասական ավելի մեծ է, քան կարծում եք» (1994) և այլ ուղեգր. երկերի։ Հայ. հրատարակվել է «Պատերազմը և մարդիկ» (1974) գիրքը։ Լենինյան մրց. (1964)։

ՊԵՍՈ (իսպ.՝ peso – բառացի՝ կշիռ), միջնադար. Իսպանիայի և նրա գաղութների արծաթե դրամը, ինչպես նաև որոշ պետությունների (նախկին իսպ. գաղութների) դրամ. միավորի անվանումը։ Հատվել է 1497–ից։

ՊԵՍՈԱ (Pessoa) Ֆեռնանդու (1888–1935), պորտուգալացի գրող։ Հեղինակ է «Անգլիական բանաստեղծություններ» (մաս 1–3, 1921), «Ալվարո դե Կամպոսի բանաստեղծությունները» (հրտ.՝ 1944), «Ալբերտո Կաեյրոյի բանաստեղծությունները» (հրտ.՝ 1946) ժող–ների, «Գահաթափություն» (1928) քաղ. հոչակագրի, «Ուղերձ» (1933) պոեմի, «Գիրք անհանգստության» (հրտ.՝ 1982) արձակ գործի։

ՊԵՍՏԱԼՈՑՅԻ (Pestalozzi) Յոհան Հայնրիխ (1746–1827), շվեյցարացի դեմոկրատ–մանկավարժ, նախն. ուսուցման ***դիդակտիկայի*** հիմնադիրներից։ Ըստ Պ–ի՝ դաստիարակությունը կոչված է զարգացնելու մարդկային խառնվածքին բնորոշ հոգևոր ու ֆիզ. հատկություններ։ Պ–ի տարր. կրթության տեսությունն ընդգրկում է մտավոր, բարոյական, ֆիզ. և աշխ. կրթությունը՝ ապահովելու համար մարդու ներդաշնակ զարգացումը։ Հեղինակ է «Լինհարդը և Գերտրուդան» (1781–87), «Ինչպես է Գերտրուդան սովորեցնում իր երեխաներին» (1801), «Կարապի երգը» (1826) և այլ աշխ–ների։

ՊԵՍՏԻՑԻԴՆԵՐ (< լատ. pestis – վարակ և caedo – սպանել), թունաքիմիկատներ, քիմ. պատրաստուկներ, որոնք կիրառվում են մոլախոտերի (հերբիցիդներ), գղտ. կենդանիների արտաքին մակաբույծների, մարդկանց ու կենդանիների հիվանդությունների փոխանցողների, բույսերի վնասատուների (միջատասպաններ, տզասպաններ, կենդանասպաններ) և հիվանդությունների (սնկասպաններ, բակտերիասպաններ) դեմ պայքարելու համար։ Պ. են նաև տերևագրկողները (դեֆոլիանտներ), ցամաքեցնող նյութերը (դեսիկանտներ), բույսերի աճն ու զարգացումը կարգավորող նյութերը (աուքսիններ, ռետարդանտներ), վանող նյութերը (ռեպելենտներ)։ Բարձր թունավորությամբ կայուն Պ–ի մեծ չափաքանակներով օգտագործումն աղտոտում է շրջակա միջավայրը, ինչը բերում է օգտ. միջատների, թռչունների, ձկների, կեն–

դանիների ոչնչացմանը և մարդկանց թունավորմանը:

ՊԵՍՏՈՒՄ (լատ.՝ Paestum), **Պոսեյդոնիա** (այժմ՝ Պեստո, Pesto), հնագույն ք. Իտալիայի հվ–արլ–ում: Հիմնադրվել է մ. թ. ա. մոտ 600–ին: Պահպանվել են մ. թ. ա. VI–V դդ–ի տաճարներ, ամրություններ, թատրոն, հրապարակ ևն, մ. թ. ա. IV դ–ի գերեզմանատուն: Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՊԵՎՏԻՆԳԵՐՅԱՆ ՔԱՐՏԵԶ (Tabula Peutingeriana – Պևտինգերյան տախտակներ), հռոմ. ճանապարհացույց–քարտեզ: XVI դ–ում հայտնաբերված քարտեզը հանձնվել է աուգսբուրգցի գիտնական Պևտինգերին (կոչվում է նրա անունով): Պ. ք. ուսումնասիրել և մեկնաբանել է գերմանացի գիտնական Կոնրադ Միլլերը, ըստ որի՝ քարտեզի հեղինակը հռոմեացի աշխարհագիր Կաստորիուսն է, որն այն կազմել է 361–363–ին: Պ. ք–ի միակ օրինակը պահվում է Վիեննայի պետ. գրադարանում:

ՊԵՎՋՈՎ Միխայիլ Վասիլևիչ (1843–1902), ռուս. ճանապարհորդ, Կենտր. Ասիայի հետազոտող, գեն–մայոր: 1876–90–ին ղեկավարել է Ջունգարիան, Մոնղոլիան, Գոբին, Քաշգարիան, Կոնլունիան ուսումնասիրող 3 արշավախմբերի աշխ–ները: Հեղինակ է աստղերով աշխարհագր. լայն–յունների որոշման եղանակի, որը կոչվում է իր անունով:

ՊԵՏԱ, **Պտա**, արվ–ների և արհեստների հովանավորը եգիպտ. դից–յան մեջ, սկզբնապես երկրպագել են Մեմֆիս ք–ում՝ որպես ողջ գոյավորի արարիչ:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ, որոշակի ժամանակահատվածում (սովորաբար՝ 1 տարում) պետության եկամուտների ու ծախսերի նախահաշիվը: Հարկերի միջոցով կուտակվող և տնտ–յան կարգավորման, տնտ. կոնյունկտուրայի խթանման, սոցիալ. ծրագրերի, գիտ–յան ու մշակույթի, ԶՈՒ–ի ֆինանսավորման, պետ. կառավարման մարմինների պահպանման, ֆին. ուն–յութ. պաշարների ձևավորման համար օգտագործվող դրամ. միջոցների կենտրոնացված ֆոնդերն են: Պ. ք. կազմում է կառ–յունը, հաստատում և ընդունում է օրենսդիր մարմինը:

ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ, պետ. կարևոր նշանակության տեղեկություններ, որոնք հրապարակման ենթակա չեն և պետության պահպանության ներքո են: ՀՀ Պ. գ. են ռազմ., արտաքին հարաբերությունների, տնտ., գիտատեխ., հետախուզ., հակահետախուզ., օպերատիվ–հետախուզ. գործունեության բնագավառների տեղեկությունները: ՀՀ Պ. գ–ի մասին օրենքն ընդունվել է 1996–ին:

ՊԵՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ (Departament of State), ԱՄՆ արտաքին քաղ–յան գլխ. գերատեսչությունը (1789–ից), որն իրականացնում է հիմնականում ԱԳՆ գործառույթներ: Գլխավորում է ***պետական քարտուղարը***:

ՊԵՏԱԿԱՆ ԴՐՈՇ, պետականության խորհրդանիշներից:

ՀՀ Պ. դ. «Պետական դրոշի մասին» ՀՀ օրենքով (15.06.2006) Հայաստանի առաջին հանրապետության եռագույն դրոշն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոն. հավասար շերտերով՝ լայն–յան և երկար–յան 1 : 2 հարաբերությամբ:

ԼՂՀ Պ. դ. նման է ՀՀ դրոշին, ավելացված է միայն սպիտակ եռանկյունաձև նախշանակար, որը խորհրդանշում է Մայր Հայաստանի հետ Արցախի վերամիավորումը: Հաստատվել է ԼՂՀ ԳԽ 02.06.1992–ի որոշմամբ:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ, 1. օրենսդիր, ներկայացուցչ. մարմին Ռուս. կայսրությունում 1906–17–ին: Ստեղծվել է 1905–ի հոկտ. 17–ի մանիֆեստով: Քննարկել է օրենքների նախագծեր, որոնք հաստատել են Պետ. խորհուրդը և կայսրը: Ընտրվել է 5 տարի ժամկետով, բազմաստիճան ընտրակարգով: Ազգաբնակչության կեսը (կանայք, ուսանողներ, զինծառայողներ ևն) ընտր. իրավունք չեն ունեցել: 1917–ին ստեղծվել է Պ. դ–ի Ժամանակավոր կոմիտե, որը Պետրոգրադի խորհրդի համաձայնությամբ կազմել է ***Ժամանակավոր կառավարություն***: 2. 1993–ի ՌԴ Սահմանադրությամբ՝ ***Դաշնային ժողովի*** 2 պալատներից մեկը: Պատգմ–ներն ընտրվում են 4 տարի ժամկետով: Պ. դ–ի նախագահներ են եղել Ի. Պ. Ռիբկինը, Գ. Ն. Սելեզնյովը, Բ. Վ. Գրիզլովը, Ս. Նարիշկինը, Վ. Վոլոդինը (2016–ից):

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, պետության գործառույթների իրականացման համար օգտագործվող եկամուտներ: Ձևավորվում են հիմնականում հարկերից, այդ թվում՝ ***եկամտահարկից***, պետ. փոխառություններից, պետ. վարկի մուտքերից, մաքսատուրքերից ևն:

ՊԵՏԱԿԱՆ ԶԻՆԱՆՇԱՆ, պետականության խորհրդանիշներից:

«Պետական զինանշանի մասին» ՀՀ օրենքով (19.04.1992) ՀՀ Պ. զ. Հայաստանի առաջին հանրապետության Պ. զ. է (հեղինակներ՝ Ալեքսանդր ***Թամանյան,*** Հակոբ ***Կոջոյան***): Զինանշանի կենտրոնում՝ վահանի վրա, պատկերված է Արարատ լ–ը՝ Նոյյան տապանով և պատմ. Հայաստանի 4 թագավորությունների՝ Բագրատունիների (վերևից՝ ձախ), Արշակունիների (վերևից՝ աջ), Արտաշեսյանների (ներքևից՝ ձախ), Ռուբինյանների (ներքևից՝ աջ) զինանշանները: Վահանը պահում են արծիվը և առյուծը, իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա ու ժապավեն:

ԼՂՀ Պ. զ–ի (հեղինակ՝ Լավրենտի Ղազարյան) վրա պատկերված է թևատարած արծիվ, որը կրում է Արտաշեսյանների արքայատոհմի թագը, իսկ գլխավերևում տարածված են արևի ճառագայթները: Կենտրոնում՝ վահանի վրա, պատկերված են ԼՂՀ դրոշը և «Մենք ենք մեր սարերը» հուշարձանը՝ Մեծ Քիրս լ–ան համապատկերին: Ներքևի մասում՝ արծվի ճանկերի մեջ խաղողի վազեր են, թթենու պտուղներ, ցորենի հասկեր: Վերևի կիսաշրջանաձև ժապավենի վրա մակագրություն է՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Արցախ»: Հաստատվել է ԼՂՀ ԳԽ 1994–ի նոյեմբ. 23–ի որոշմամբ:

ՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, իրավ. նորմերի ամբողջություն, որը կարգավորում է պետ. մարմինների ձևավորման և գործունեության համակարգն ու սկզբունքները, ընտր. համակարգը, քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները: Պ. ի–ի գլխ. աղբյուրը սահմանադրությունն է:

ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՈՒ, պետականորեն կազմավորված ժողղ–ի ***պաշտոնական լեզուն***: ՀՀ պետ. լեզուն ***հայերենն*** է:

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ, 1. օրենսդրա–խորհրդակց. բարձրագույն մարմին Ռուս. կայսրությունում (1810–1917): 2. Որոշ պետություններում (Ֆրանսիա, Բելգիա, Նիդեռլանդներ ևն) պետ. կենտր. մարմին: 3. Կառ–յան պաշտոն. անվանումը Շվեդիայում, Նորվեգիայում, Ֆինլանդիայում, Շվեյցարիայի որոշ կանտոններում, ՉԺՀ–ում:

ՊԵՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ, դրամ. միջոցներ, որոնք ուղղվում են պետության և ՏԻՄ–ի գործառույթների և նպատակային ծրագրերի ֆինանսավորմանը: Ըստ տնտ. բովանդակության՝ լինում են ընթացիկ (պետ. իշխանության մարմինների ընթացիկ ֆինանսավորում, տեղ. բյուջեներին և տնտ–յան առանձին ճյուղերին աջակցություն) և կապիտալ (ինովացիոն և ներդրում. գործունեության ապահովում, ներդրում. նպատակներով իրավար. անձանց վարկավորում): Նախատեսվում են ռազմ., տնտ., սոցիալ., արտաքին տնտ., կառավարման աշխատակազմի պահպանման և այլ ծախսերի համար:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, պետության կառավարման համապատասխան մարմինների միջոցով պետ. իշխանության իրականացումը:

ՊԵՏԱԿԱՆ ՄԵՂԱԴՐՈՂ, դատախազ, որը դատարանում պաշտպանում է մեղադրանքը: Պ. մ–ի մասնակցությունը դատաքննությանը հանրային դատավարության տարրերից է:

ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ, տարբեր երկրներում պետության սահմանած մրցներ, որոնք տրվում են գիտ–յան և տեխնիկայի, գրկ–յան և արվ–ի, ճարտ–յան և այլ բնագավառներում արձանագրված նշանակալի ձեռքբերումների համար: ԽՍՀՄ–ում սահմանվել է 1966–ին [տրվել է 1966–91–ին, նշանակությամբ եղել 2–րդը՝ Լենինյան մրց–ից (1925–91) հետո]: ԽՍՀՄ–ում 1941–52–ին տրվել են Ստալինյան մրց–ներ (3 կարգի), որ հետագայում նույնացվել են Պ. մ–ի հետ: Միութ. հանրապետություններում նույնպես սահմանվել են հանրապետ. Պ. մ.: ՀԽՍՀ Պ. մ.՝ գիտ–յան և տեխնիկայի բնագավառում՝ 1969–ի հոկտ–ից, գրկ–յան, արվ–ի, ճարտ–յան բնագավառում՝ 1974–ի սեպտ–ից, Սոց. մրցության առաջավորների համար՝ 1977–ից:

ՀՀ Պ. մ. սահմանվել են 2002–ին՝ հայրեն. գրկ–յան և արվ–ի, ճարտ–յան և քաղաքաշինության, ճշգրիտ և բնական, հումանիտար և հասարակագիտ. գիտ–յունների բնագավառներում լավագույն ստեղծագործությունները, հայտնագործությունները (գյուտերը) և աշխ–ները գնահատելու, ինչպես նաև հեղինակներին խրախուսելու նպատակով: Շնորհվում է 2 տարին մեկ: Որպես մրց.՝ տրվում են մրց–ի դափնեկրի վկայագիր, կրծքանշան և դրամ. պարգև:

2001–ին սահմանվել է նաև ՀՀ նախագահի ամենամյա մրց., շնորհվում է բնական գիտ–յունների, տեխ. գիտ–յունների և SS ոլորտի, արվ–ի, բժշկագիտ–յան, ֆիզիկայի, գրկ–յան, հումանիտար գիտ–յունների բնագավառներում նշանակալի հայտնագործության կամ ներդրած ավանդի համար (1–ական մրց.), 2004–ին՝ ՀՀ նախագահի երիտասարդ. մրց.՝ արվ–ի (3 մրց.) և գրկ–յան (1 մրց.) բնագավառներում, 2005–ին՝ ՀՀ նախագահի երիտասարդ. մրց.՝ դաս. երաժշտության բնագավառում՝ 2 անվանակարգերով՝ երգեցողություն (2 մրց.), գործիք. կատարում (2 մրց.), 2005–ին՝ ՀՀ նախագահի մրց.՝ Հայոց ցեղասպանության ճանաչման գործում նշանակալի

ավանդ ներդրած անձանց (1 մրց.՝ ՀՀ քաղաքացու կամ հայ գործչի, 1 մրց.՝ օտարազգի գործչի կամ կազմ–յան), 2009–ին՝ ՀՀ նախագահի մրց. ՏՏ ոլորտում համաշխ. ներդրման համար (1 մրց.):

ԼՂՀ–ում 1995–ին սահմանվել է Եղիշեի անվ. ամենամյա Պ. մ.. շնորհվում է գրկ–յան (Արցախյան շարժումը լավագույնս արտացոլող ստեղծագործություն), արվ–ի, կինեմատոգրաֆիայի, գիտ–յան բնագավառներում նշանակալի հայտնագործության կամ ներդրած ավանդի համար:

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ, տարերային աղետների, պաշտպ–յան կարիքների ևնի դեպքերում անհրաժեշտ հումքի և նյութերի, վառելիքի, մեքենաների ու սարքավորումների որոշ տեսակների, հացահատիկի և այլ պարեն. ապրանքների ստեղծվող ու համալրվող պաշարներ:

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐ, հանձնարարություն, որ պետության անունից տրվում է կառ–յան հաստատած ծրագրերին համապատասխան արտադրանքի թողարկման ու մատակարարման, աշխ–ների կատարման ու ծառայությունների մատուցման համար և վճարվում է պետ. բյուջեից: Տնտ. կապերի ուղղակի կարգավորման ձև է: ՀՀ–ում Պ. պ–ով իրականացվում է նաև գրահրչ. գործունեություն:

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ, տրվում են պետ. շին–յան, տնտ–յան, գիտ–յան, կրթության, մշակույթի, արվ–ի բնագավառներում, առողջապ–յան, սպորտի զարգացման ոլորտներում, օրինականության ամրապնդման, հայրենիքի պաշտպ–յան և պետության անվտանգության ապահովման գործում նշանակալի ավանդի, բարեգործ. ակտիվ գործունեության, ինչպես նաև այլ ակնառու ծառայությունների համար:

1. ՀՀ Պ. պ.: ՀՀ բարձրագույն պետ. պարգևը *Հայապետի Ազգային հերոս* կոչումն է: Սահմանվել են նաև Փառքի, «Տիգրան Մեծ», «Մարտական խաչ» (1–ին և 2–րդ աստիճաններ), «Սբ Վարդան Մամիկոնյան», «Սբ Մեսրոպ Մաշտոց», «Պատվո», «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» (1–ին և 2–րդ աստիճանների), Բարեկամության շքանշաններ, Արիության, Մարտական ծառայության, «Անանիա Շիրակացի», «Մխիթար Գոշ», «Մխիթար Հերացի», «Մովսես Խորենացի», «Հասարակական կարգի գերազանց պահպանման համար», Երախտագիտ–յան, «Աշխատանքային վաստակի համար», Ծնողական փառքի մեդալներ:

2. ԼՂՀ Պ. պ.: ԼՂՀ բարձրագույն պարգևը «Ոսկե արծիվ» շքանշանն է, տրվում է «Արցախի հերոս» բարձրագույն կոչմանն արժանացած անձանց: Սահմանվել են նաև «Մարտական խաչ» (1–ին և 2–րդ աստիճաններ), «Մեսրոպ Մաշտոց», «Գրիգոր Լուսավորիչ» շքանշաններ, «Անանիա Շիրակացի», «Վաչագան Բարեպաշտ», «Մխիթար Գոշ», Մարտական ծառայության, Շուշիի ազատագրման, Արիության, Երախտագիտ–յան մեդալներ:

Պ. պ. շնորհում, շքանշաններով և մեդալներով պարգևատրում են ՀՀ և ԼՂՀ նախագահները՝ այդ մասին հրապարակելով հրամանագիր:

Պ. պ. սահմանել է նաև Հայաստանի առաջին հանրապետությունը (1918–20)՝ «Հայրենիքին արած ծառայությունների համար» (1919) և «Վարդան Զորավար» (1920) շքանշանները: Պ. պ. սահմանվել են խորհրդ. իշխանության 1–ին տասնամյակներում՝ մինչև դրանց միասնականացումը համամիութ. մասշտաբով: Շնորհվել են ՀԽՍՀ աշխ–ի հերոսի կոչում, Աշխ. դրոշի, աստղի և այլ շքանշաններ: Սահմանվել են նաև ՀԱԵ՝ Մայր աթոռ Սբ Էջմիածնի և ՄՏԿԿ պարգևներ:

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ, չմարված փոխառությունների և դրանց չվճարված տոկոսների գծով պետության պարտքի ընդհ. գումարը: Ըստ փոխառությունների տեղաբաշխման ոլորտի՝ լինում են ներքին և արտաքին:

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, սեփականության ձև, երբ գույքը (այդ թվում՝ արտադր–յան միջոցներն ու արդյունքները ամբողջությամբ) պատկանում է պետությանը՝ բաժնային կամ համատեղ սեփականության հիմքով: Պետությանը կարող են պատկանել ԲՀ–ների բաժնետոմսեր, այն որպես սեփականություն կարող է ունենալ իր գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ցանկացած գույք:

«ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄ», հայեցակարգ, ըստ որի՝ սոցիալիզմին անցումը կարող է իրականացվել մասնակի բարեփոխումներով, տնտ–յանը և սոցիալ. հարաբերություններին պետության ակտիվ միջամտությամբ (Լ. Բլան, Կ. Ի. Ռոդբերտուս–Յագեցով, Ֆ. Լասալ, կաղետեր. սոցիալիզմ): «Ռազմազորանոցային սոցիալիզմի» տարատեսակ:

ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԿ, *վարկի* տեսակ, երբ պետությունը հանդես է գալիս որպես դրամ. միջոցների փոխատու, իսկ բնակչությունը՝ վարկառու (պետ. փոխառության պարտատոմսերի սեփականատեր, համապատասխան բանկերի ավանդատու):

ՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, պետության ստացած վարկերը: Պ. փ–ի պարտատոմսերը կարող են տեղաբաշխվել բնակչության շրջանում բաժանորդագր. եղանակով, վաճառվել բանկերի միջոցով: Ըստ մարման ժամկետների՝ տարբերում են կարճաժամկետ (մինչև 1 տարի), միջնաժամկետ (1–5 տարի), երկարաժամկետ (ավելի քան 5 տարի), ըստ եկամտաբերության տեսակների՝ տոկոսային (եկամուտը ստանում են ամեն տարի, հավասար բաժիններով, հաստատված դրույքաչափով) և շահումային, կամ վիճակախաղ. (եկամուտը վճարվում է պարտատոմսի մարման ժամանակ), ըստ տեղաբաշխման վայրի՝ ներքին և արտաքին Պ. փ.:

ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ, պետ. բարձրագույն պաշտոն Եվրոպայի և Ամերիկայի մի շարք երկրներում: Մեծ Բրիտանիայում Պ. ք–ներ են կոչվում որոշ գերատեսչությունների (ՆԳ, պաշտպ. ևն) ղեկ–ները, Բելգիայում՝ փոխնախարարները: ԱՄՆ–ում Պ. ք. պետ. դեպարտամենտի ղեկ–ն է:

ՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆԵՐԳ, պետականության խորհրդանիշներից:

«Պետական օրհներգի մասին» ՀՀ օրենքով (25.12.2006) ՀՀ Պ. օ. Հայաստանի առաջին հանրապետության օրհներգն է՝ «Մեր հայրենիքը» (խոսքը՝ որոշ փոփոխություններով՝ Միքայել *Նալբանդյանի*, երաժշտությունը՝ Բարսեղ *Կանաչյանի*):

ԼՂՀ Պ. օ. «Ազատ և անկախ Արցախն է» (խոսքը՝ Վարդան *Հակոբյանի*, երաժշտությունը՝ Արմեն Նասիբյանի): Հաստատվել է ԼՂՀ ԳԽ 1994–ի դեկտ. 23–ի որոշմամբ:

ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ, դրամ. հարաբերությունների կազմակերպման ձև, որոնց մասնակցում է պետությունը: Պետության գործառույթների իրականացման համար ֆին. պաշարների ձևավորումն ու օգտագործումն է:, կատարում են բաշխիչ, վերահսկիչ, կարգավորիչ գործառույթներ:

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, հաս–յան պետ. կառուցվածքը և պետ. կառուցվածքի կամ որևէ պետ. կարգի սկզբունքներին հավատարմությունը:

ՊԵՏԱՀ–ՏԻԿՎԱ, ք. Իսրայելում՝ Թել Ավիվից արլ.: Բն.՝ 180 հգ. (2010): Գիտ–յան շրջանների (ցիտրուսներ) կենտրոն է:

ՊԵՏԵԼԵՅԻ (Petelei) Իշտվան (1852–1910), հայազգի հունգարացի գրող: 1886–91–ին՝ «Կոլոշվար» (հունգ.) թերթի խմբ.: Հեղինակ է «Խաչեր», «Գավառական մարդիկ», «Կյանք», «Սոխակ» (1880–90–ական թթ.) պատմվածքների ժող–ների, «Մատանի» պատմվածքի [1904, «Արմենիա» (հունգ.) հայագիտ. հանդես, № 10]: Անտիպ գործերը տպագրվել են «Տրանսիլվանիայի աստղեր» (հրտ.՝ 1935) ժող–ում:

ՊԵՏԵՆ (Pétain) Անրի Ֆիլիպ (1856–1951), ֆրանսիացի ռազմ. և պետ. գործիչ, մարշալ (1918): 1917–18–ին՝ ԱՀՊ–ի ժամանակ, ֆրանս. զորքերի գլխ. հրամ.: 1940–ից՝ վարչապետ: Ստորագրել է զինադադար ֆաշիստ. Գերմանիայի հետ (Կոմպիենի զինադադար 1940): 1940–ի հուլիս–1944–ի օգոստ–ին գլխավորել է *«Վիշի»*–ի վարչակարգը: Ֆրանսիայի ազատագրումից հետո դատապարտվել է մահվան, որը փոխարինվել է ցմահ բանտարկությամբ:

ՊԵՏԵՆԿՈՖԵՐ (Pettenkofer) Մաքս (1818–1901), գերմանացի հիգիենիստ, փորձարար. հիգիենայի հիմնադիրներից: Մյունխենում հիմնադրել և ղեկավարել է Եվրոպայում առաջին հիգիենայի ինստ–ը: Աշխ–ները վերաբերում են խոլերայի պատճառագիտ–յանը և համաճարակաբանությանը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 1723, Ռուսաստանի և Պարսկաստանի միջև: Ստորագրվել է Ս. Պետերբուրգում՝ ռուս. զորքերի՝ 1722–23–ի Պարսկ. արշավանքի արդյունքում: Նախատեսում էր Ռուսաստանի զինված օգնությունը Պարսկաստանին՝ իր տարածքը ներխուժած թուրքերի և ապստամբ աֆղանների դեմ: Պարսկաստանի Կառ–յունը պարտավորվել է ճանաչել Դերբենտ, Բաքու ք–ների և այլ տարածքների պատկանելությունը Ռուսաստանին: Սակայն Պարսից Թահմազ II շահը հրաժարվել է վավերացնել պայմանագիրը, որից հետո՝ 1724–ին, Ռուսաստանը պայմանագիր է կնքել Թուրքիայի հետ (տես *Ռուս–թուրքական պայմանագիր 1724*):

ՊԵՏԵՐՄԱՆ (Petermann) Հայնրիխ Հուլիոս (1801–1876), գերմանացի լեզվաբան, հայագետ, սեմագետ: Հայ–ի պատմահամեմատ. ուսումնասիրության հիմնադիրը: Բեռլինի համալսարանի պրոֆ. (1837): Պ–ի «Ճանապարհորդություն դեպի Արևելք» (հ. 1–2, 1860–61) աշխ–յան մեջ տեղեկություններ կան նաև հայերի մասին: Հեղինակ է «Հայոց լեզվի քերականություն» (1837), Ագուլիսի և Թիֆլիսի բարբառների մասին (1866) աշխ–ների:

ՊԵՏԵՐՍ (Peeters) Պոլ (1870–1950), բելգիացի լեզվաբան, արևելագետ, հայագետ: Բելգիայի (1935), Հռոմի հնագիտ–յան (1942), Ֆրանսիայի գեղեցիկ դպրությանց

(1945) ակադ-ների անդամ: Հեղինակ է «Շապուհի հալածանքի սկզբնավորումը ըստ Փավստոս Բուզանդի» (1920), «Հայոց այբուբենի պատմության համար» (1929), «Հայկական վարկածը Սոկրատի պատմության մասին» (1934) աշխ-ների, «Պասազնաթես-պարսկածին» (1933) հետազոտության և այլ երկերի:

ՊԵՏԵՐՄԱՆ Միխայիլ Նիկոլաևիչ (1885–1962), ռուս. լեզվաբան: Հեղինակ է ընդհ. և պատմահամեմատ. հնդեվրոպ. լեզվաբանքն, արդի ռուս-ին, նաև հայ-ին, ֆրանս-ին, լեզվաբ-յան պատմագրությանը վերաբերող, այդ թվում՝ «Ակնարկ ռուսերենի շարահյուսության» (1923) աշխ-ների:

ՊԵՏԵՖԻ (Petőfi) Շանդոր (1823–1849), հունգար բանաստեղծ: Ղեկավարել է «Երիտասարդ Հունգարիա» կազմ-յունը, Պեշտի ապստամբությունը: Զոհվել է 1848–49-ի հեղ-յան ժամանակ: Հեղինակ է ազատագր. պայքարին նվիրված «Բանաստեղծություններ» (1844) ժող-ի, որի շատ գործեր դարձել են ժող. երգեր, «Ընդդեմ արքաների», «Վայրի ծաղիկ», «Դյուցազն Յանոշը», «Գյուղական մուրճ» (բոլորն էլ՝ 1844), հեղ-հերոս. թեմաներով «Պիշտա Սիլայ», «Շալգո», «Առաքյալը» (երեքն էլ՝ 1846) պոեմների, «Էզ վագրը և բորենին» (1845) չափածո դրամայի, «Ամպեր» (1845–46) բանաստեղծ. շարքի: Հայ. հրատարակվել են «Բանաստեղծություններ» (1952, 1957, 1973) ժող-ները:

ՊԵՏԻԿՅԱՆ Գրիգոր (1908–1981), գեղանկարիչ: Գործերից են՝ «Կապրիի ձկնորսները», «Երիտասարդ նեապոլցին», «Մերկը և թրաշուշանները», «Գնչուներ» ևն: Պատկերազարդել է «Սուրբ Ֆրանցիսկո Ասիզացու կյանքը» գիրքը: Նյու Յորքի Ազատ արվ-ների ազգ. սալոնի ցուցահանդեսի մրց. (1956):

ՊԵՏԻԿՅԱՆ Հրաչյա Վահանի (ծ. 1960), հրաձիգ: ԽՍՀՄ ս. վ. (1979), միջազգ. կարգի (1982), ԽՍՀՄ (1992) ս. վ. վ.: Օլիմպ. խաղերի (1992), աշխարհի (1986, 1990), Եվրոպայի (1983–90, 1992), ԽՍՀՄ (1983–92) չեմպիոն:

ՊԵՏԻԿՅԱՆ Վարուժան (1927–1989), բանաստեղծ: Հեղինակ է «Սիրոյ եւ կարօտի աղաւնիներ» (1969), «Կենսաբրեցում» (1990) բանաստեղծությունների ժող-ների: ԹՄՄ Հայկաշեն Ուզունյան գր. մրց.:

ՊԵՏԻՊԱ (Petipa) Մարիուս (1818–1910), բալետի ֆրանսիացի արտիստ, բալետմայստեր: 1869–1903-ին՝ Ս. Պետերբուրգի բալետ. թատերախմբի գլխ. բալետմայստեր: Նրա բազմաթիվ բեմադրություններ ընդգրկված են նաև ժամանակակից խաղացանկում՝ որպես XIX դ-ի պարարվ-ի լավագույն նմուշներ (Լ. Ֆ. Մինկուսի «Պախիտա», «Բայադերկա», երկուսն էլ՝ 1877, Պ. Ի. Չայկովսկու «Քնած գեղեցկուհին», 1890, Ա. Կ. Գլազունովի «Ռայմոնդա», 1898, ևն):

ՊԵՏԼՅԱԿՈՎ Վլադիմիր Միխայլովիչ (1891–1942), ռուս ավիակոնստրուկտոր: Սասնակցել է առաջին ծանր ռմբակոծիչների (ՏԲ-1, -2) նախագծմանը: Ստեղծել է Պե-8 և Պե-2 ռմբակոծիչները: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941): Զոհվել է ավիավթարից:

ՊԵՏՈ, **Պետրոսյան Ալեքսանդր** (ծ. թ. անհտ–1896), ազգ-ազատագր. շարժման գործիչ: 1894-ին առաջնորդել է Դերիկի վանքից Վասպուրական ՀՅԴ կուս-յան 1-ին զինատար խումբը: Վանի 1896-ի ինքնապաշտպ-յան ժամանակ կռվող ուժերի ղեկ-ն էր: Վարագա վանքից Պարսկաստան անցնելիս իր խմբով բախվել է քրդերի հետ և զոհվել:

ՊԵՏՈՍ Լուկիոս Կեսեննիոս, մ. թ. I դ-ի հռոմեացի գործիչ: ***Կապադովկիայի*** կուսակալ և Հայաստան ուղարկված բանակի գլխ. հրամ.: 61-ի աշնանը ներխուժելով Հայաստան՝ ձմեռելու համար ճամբարել է Անձիտում՝ Հռանդեայի մոտ: Ծանր պարտություն է կրել հայ-պարթև. զորքից և կնքել հռոմեացիների համար ստորացուցիչ հաշտություն:

ՊԵՏՐԱՐԿԱ (Petrarca) Ֆրանչեսկո (1304–1374), իտալացի բանաստեղծ, Վերածննդի հումանիստ. մշակույթի և իտալ. ազգ. պոեզիայի հիմնադիրը: Պ. Եվրոպայում առաջիններից է իդեալականացրել անտիկ աշխարհը, քննադատաբար է վերագնահատել միջնադար. սքոլաստիկան: Պ-ի ամենախոշոր գործը «Կանցոններ» («Երգերի գիրք», հրտ.՝ 1470) սոնետների, մադրիգալների, բալլադների ժող-ն է, որտեղ առանձնանում է սիրած կնոջը՝ Լաուրային նվիրված քնար. սիրային բանաստեղծությունների շարքը: Հեղինակ է նաև Պունիկյան 2-րդ պատերազմին նվիրված «Աֆրիկա» (1339–42) պոեմի (որի համար դափնեպսակ է ստացել), «Բուկոլիկներ» (1346–57), «Իմ գաղտնիքը կամ Զրույցների գիրք...» (1342–47), «Նամակ սերունդներին» (1374) ինքնակենսագր. արձակ երկերի, «Ընդդեմ յուրաքանչյուր ճակատագրի միջոցների մասին» (1360–66) երկխոսություն-նամականու: Պ. համարվում է (Դանտեի ու Բոկաչչոյի հետ) գր. իտալ-ի սկզբնավորողներից: Հայ. հրատարակվել է «Սոնետներ և կանցոններ» (1964) ժող-ը:

ՊԵՏՐԱՒՈՒԿԱՍ (Petrauskas), լիտվացի երաժիշտ եղբայրներ: **Միկաս Պ.** (1873–1937), կոմպոզիտոր: Լիտվ. օպերայի հիմնադիրը («Բիրուտե», 1906, «Լորտուների թագուհի Էգլեն», 1918): Հեղինակ է նաև օպերետների («Ադամ և Եվա», 1903, «Անտառի արքան», 1919, ևն): 1905–28-ին՝ ԱՄՆ-ում: Հանդես է եկել նաև որպես երգիչ: **Կիպրաս Պ.** (1885–1968), երգիչ (քնարադրամատիկ. տենոր): ԽՍՀՄ ժող. արտիստ (1950): Լիտվայի ազգ. օպեր. թատրոնի հիմնադիրներից (1920, մինչև 1958-ը՝ մեներգիչ): 1911–20-ին՝ Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնի մեներգիչ (Ֆաուստ՝ Շ. Գունոյի «Ֆաուստ», Ալֆրեդ, Օթելլո՝ Ջ. Վերդիի «Տրավիատա», «Օթելլո», Ռուդոլֆ՝ Ջ. Պուչչինիի «Բոհեմ», ևն):
ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ՊԵՏՐԵՍԿՈՒ (Petrescu) Կամիլ (1894–1957), ռումին գրող: Հեղինակ է «Դիցանուշների խաղ» (1916–18) և այլ դրամաների, «Սիրո վերջին գիշերը պատերազմի առաջին գիշերն է» (1930) վեպի, որտեղ պատկերել է մտավորականության ճակատագիրը:

ՊԵՏՐԵՍԿՈՒ Յոն (Յանկու, 1851–1932), ռումինահայ դերասան: 1878-ից՝ Բուխարեստի Ազգ. թատրոնի դերասան (Տոմշա՝ Վ. Ալեքսանդրիի «Դեսպան-իշխանը», Օրգոն՝ Մոլիերի «Տարտյուֆ», Լիր արքա, Համլետ՝ Վ. Շեքսպիրի «Լիրա արքա», «Համլետ») ևն:

ՊԵՏՐԵՍԿՈՒ Չեզար (1892–1961), ռումին գրող: Ռումինիայի ակադ-ի ակադ. (1955): Հեղինակ է սոցիալ-բարոյագիտ. թեմաներով «Խորտակում» (1927), «Սև ոսկի» (1934) վեպերի, «Ֆրամ՝ սպիտակ արջ» (1932) և այլ մանկ. վիպակների:

ՊԵՏՐԺԱԿ (Petrzhak) Կոնստանտին Անտոնովիչ (1907–1998), լեհ ֆիզիկոս: Խորհրդ. փորձառ. միջուկ. ֆիզիկայի հիմնադիրներից: 1940-ին Գ. Ն. ***Ֆլյորովի*** հետ հայտնագործել է ^{235}U-ի ինքնական քայքայման երևույթը: Պ-ի աշխ-ներով զգալիորեն զարգացել են միջուկ. ֆիզիկան և ներմիջուկ. էներգիայի իրացման գործն. հնարավորությունները: ԽՍՀՄ Պետ մրց. (1946, 1953):

ՊԵՏՐԻ (Petri) Օլաուս (1493–1552), շվեդ գրող: Նոր կտակարանի շվեդ. թարգմանիչներից է (1526): Կազմել է «Շվեդական երգեր» (1530) սաղմոսների, «Շվեդիայի տարեգրություն» (մոտ 1540, հրտ.՝ 1818) ժող-ները: Հեղինակ է «Կատակերգություն Տովիի մասին» (1550) դրամատիկ. գործի:

ՊԵՏՐԻԴԻՍ Պետրոս (1892–1977), հույն կոմպոզիտոր, դիրիժոր, երաժշտ. քննադատ: Հանդես է եկել որպես սիմֆ. դիրիժոր, 1915-ից՝ երաժշտ. քննադատ: Հեղինակ է «Զեֆիրա» (1964) օպերայի, «Չարչի» (1944) բալետի, սիմֆոնիաների (1929–51), «Դիգենիս Ակրիտաս» (1939) դրամ. սիմֆոնիայի, «Հունական» (1930) սիմֆ. սյուիտի, կոնցերտների, երգերի և այլ երկերի:

ՊԵՏՐԻՅԻ Իոանե (ծ. թ. անհտ–մոտ 1125), վրացի փիլ.: Նորպլատոնականության ներկայացուցիչ, ***Պրոկլեսի*** հետևորդներից: Գործունեություն է ծավալել Կ. Պոլսում, Պետրիցիոնեում (Բուլղարիա), Վրաստանի Գելաթի ակադ-ում: Վրաց. է թարգմանել Պրոկլեսի, Արիստոտելի ստեղծագործությունները, Նեմեսիոս Էմեսացու «Մարդու բնության մասին» աշխ-ը:

ՊԵՏՐՅԱՆՈՎ-ՍՈԿՈԼՈՎ Իգոր Վասիլևիչ (1907–1996), ռուս ֆիզքիմիկոս: ՌԳԱ ակադ. (1966): Սոց. աշխ. հերոս (1971): Աշխ-ները վերաբերում են բնական և արհեստ. աերոդիսպերս համակարգերին (կայունություն, էլ. հատկություններ ևն): Մշակել է սկզբունքորեն նոր զտող նյութեր (Պ-Ս-ի զտիչներ): Եղել է «Քիմիան և կյանքը» ամսագրի գլխ. խմբ. (1964-ից): ԽՍՀՄ Պետ. (1941), Լենինյան (1966) մրց-ներ:

ՊԵՏՐՈԶԱՎՈԴՍԿ, ք. (1777-ից), ՌԴ Կարելիայի վարչ. կենտրոնը: Նվինգստ՝ Օնեգա լճի ափին: Երկթղ. հանգույց է: Բն.՝ 271,1 հզ. (2010): Ունի 2 բուհ, ազգագր. թատրոն, թանգարաններ ևն: Պ-ում է ՌԳԱ Կարելիայի մասնաճյուղը:

ՊԵՏՐՈԼԵՈՒՄ (միջնադար. լատ.՝ petroleum – նավթ), պարաֆինի և ցեռեզինի խառնուրդը նավթայուղերի ապապարաֆինացման ժամանակ անջատվող մնացորդ. յուղի հետ: Կիրառում են ցեռեզին, վազելին, պահածոյացնող և պլաստիկ քայուղեր ստանալու համար:

ՊԵՏՐՈԼՈԳԻԱ (< հուն. Petros – քար և ...*լոգիա*), **պետրոգրաֆիա, ապարաբանություն**, գիտ-յուն լեռնապարների, նրանց հանքաբան. ու քիմ. կազմի, կառուցվածքի և կազմվածքի, տեղադիրքի պայմանների, տարածման օրինաչափությունների, երկրակեղևում ու երկրի մակերևույթին ծագման և փոփոխության մասին: Սերտորեն կապված է հանքաբանության, շերտագրության, օգտ. հանածոների երկրբ-յան, մետաղագոյացման հետ: Ըստ ուսումնասիրվող հատկությունների և կիրառման եղանակների՝ առանձնացնում են պետրոքիմիա, պետրոֆիզիկա, պետրոտեկտոնիկա բաժինները, ֆիզ., քիմ. և փորձարար. Պ., տեխ. Պ. ևն:

ՊԵՏՐՈՆԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ, **Պետրոնաս պատրիկ**, IX դ-ի հայազգի բյուզան-

դացի ռազմ. գործիչ (Մամիկոնյան՝ ըստ Ն. Ադոնցի): ***Թեոդորա*** (842–856) կայսրուհու և Վարդաս կայսեր եղբայրը: 863-ին Մելիտենեի արաբ ամիրային հաղթելուց հետո նշանակվել է սխոլերի դոմեստիկոս (սպարապետ), ստացել մագիստրոսի պատվաստիճան:

ՊԵՏՐՈՆԻՈՍ (Petronius) Գայոս, **Պետրոնիոս Դատավոր** (մոտ 14–66), հռոմեացի գրող: Կրել է «նրբագեղության դատավոր» պատվանունը: Հեղինակ է «Սատիրիկոն» երգիծ. վեպի, որտեղ նկարագրել է հռոմ. հաս-յան բարքերը: Մեղադրվել է ***Ներոնի*** դեմ դավադրության մեջ: Ինքնասպան է եղել:

ՊԵՏՐՈՊԱՎԼՈՎՍԿ, ք. (1807-ից) Ղազախստանում: Հս-ղազախ. մարզի վարչ. կենտրոնը՝ Իշիմ գետի ափին: Բն.՝ 195 հզ. (2010): Երկթղ. հանգույց է: Հիմնադրվել է 1752-ին:

ՊԵՏՐՈՊԱՎԼՈՎՍԿ-ԿԱՄՉԱՏԿԱՅԻ, **Կամչատկայի Պետրոպավլովսկ**, ք. (1812-ից), ՌԴ Կամչատկայի երկրամասի վարչ. կենտրոնը՝ Կամչատկա թ–կղզու արլ–ում: Նվինգստ՝ Խաղաղ օվկ–ի Ավչինի ծովախորշում: Բն.՝ 194,1 հզ. (2010): Ձկնորս. նավատորմիղի հենակետ: Կան նավաշին., նավանորոգման, ձկնապահածոների և այլ ձեռն-ներ: Ունի 3 բուհ, ՌԴԱ հրաբխագիտ-յան ինստ., թատրոն, երկրագիտ. թանգարան: Հիմնադրվել է 1740-ին, 1812–24-ին՝ Պետրոպավլովսկի Պորտ:

ՊԵՏՐՈՊՈԼԻՍ (Petrópolis), ք. Բրազիլիայի Ռիո դե Ժանեյրոյի նհնգ-ում: Բն.՝ 283 հզ. (2010): Զարգացած է զբոսաշրջությունը: Հիմնադրվել է 1845-ին:

ՊԵՏՐՈՍ (Սիմոն, ծ. թ. անհտ–մոտ 65), ***Հիսուս Քրիստոսի*** 12 առաքյալներից: Հիսուսը Պ-ին ընտրել է որպես աշակերտ՝ եղբոր՝ ***Անդրեասի*** հետ, և անվանակոչել Կիփաս (Վեմ): Առաջինն է Քրիստոսին ընդունել որպես Աստծու Որդի: Քրիստոսի բանտարկության գիշերը Պ., վախենալով հետապնդումներից, 3 անգամ ուրացել է նրան, ինչպես կանխատեսել էր Քրիստոսը, սակայն հետագայում անկեղծորեն զղջացել է և ներվել: Քրիստոսի ***Համբարձումից*** հետո Պ. բազմաթիվ երկրներում քարոզել է Ավետարանը, այդ ընթացքում բազում հրաշքներ գործել (հիվանդների բժշկում, հանգուցյալների վերակենդանացում ևն): Պ. հեղինակ է Նոր կտակարանում ներառված կանոնական 2 ընդհանրական նամակի: Ըստ կաթոլիկ. ավանդության՝ Պ. Հռոմի առաջին եպս-ն է:

ՊԵՏՐՈՍ, **Պետրոս Խանձկեցի** (ծ. թ. անհտ–1675), Գանձասարի կաթողիկոս՝ 1647-ից՝ ***Հասան-Ջալալյանների***՝ Խանձքում հաստատված ճյուղից: Ծավալել է շին. գործունեություն: Հայաստանից ռուս. արքունիք՝ Ալեքսեյ Միխայլովիչ ցարին հղած 1-ին պաշտոն. նամակի (հայ վաճառականների երթևեկն ապահովելու խնդրանքով) հեղինակն է:

ՊԵՏՐՈՍ Ա ԳԵՏԱԴԱՐՁ (ծ. թ. անհտ–1058), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1019-ից: 1022-ին բյուզ. զորաբանակի ներխուժումը Հայաստան կանխելու նպատակով ***Հովհաննես Սմբատի*** կարգադրությամբ Տրապիզոնում ***Վասիլ II*** կայսեր հետ կնքել է պայմանագիր, որով Անիի թագավորությունը Հովհաննես Սմբատի մահից հետո անցնելու էր կայսրությանը: 1045-ին ***Գագիկ Բ***-ի՝ Կ. Պոլիս մեկնելուց հետո Կոստանդին Մոնոմախ կայսրին է ուղարկել իրեն վստահված Անիի բանալիները: Պ. Ա. Գ. հայ հոգևոր երգարվ-ի երախտավորներից է:

ՊԵՏՐՈՍ I ՄԵԾ (1672–1725), Ռուսաստանի ցար՝ 1682-ից՝ ***Ռոմանովների*** հարստությունից: Ռուսաց 1-ին կայսրը՝ 1721-ից: ***Ալեքսեյ Միխայլովիչի*** կրտսեր որդին: Պ. I-ի գլխավորած ***Ազովյան արշավանքներով*** (1695–96) Ռուսաստանը հաստատվել է Ազովի ծովի ափին: Հաղթելով ***Հյուսիսային պատերազմում*** (1700–21)՝ Ռուսաստանը դուրս է եկել Բալթիկ ծով, ***Պարսկական արշավանքի*** (1722–23) արդյունքում տիրույթներ է ձեռք բերել Կասպից ծովի ափին: Ռուսաստանը դարձել է եվրոպ. մեծ տերություն: Իրականացրել է արմատ. բարեփոխումներ, եղել է հմուտ զորավար: Նրա ղեկավարությամբ ստեղծվել են ՌԾՆ, կանոնավոր բանակ, կառուցվել է (1703) նոր մայրաքաղաք՝ Ս. Պետերբուրգը:

Պ. I-ի օրոք ձևավորվել է հայ ազգ-ազատագր. շարժման ռուս. կողմնորոշումը: 1701-ին ***Իսրայել Օրին*** Ռուսաստանում հանդիպումներ է ունեցել Պ. I-ի և նրա մերձավոր գործակիցների հետ: Պարսկ. արշավանքի (1722–23) ժամանակ հաշվի է առնվել Իսրայել Օրու՝ Հայաստանի ազատագրության ծրագիրը: Պ. I-ը 1711-ին վերահաստատել է ***Նոր Ջուղայի*** հայ վաճառականներին շնորհված (1667) մի շարք արտոնություններ: 1724-ի նոյեմբ. 10(21)-ին կայսրը հրատարակել է հրովարտակ՝ հայ ժողղ-ին իր հովանավորության տակ վերցնելու մասին:

ՊԵՏՐՈՍ I-Ի ԿՂԶԻ, Բելինգսհաուզենի ծովում՝ Անտարկտիդայից 400 *կմ* հեռավոր: Տարածքը՝ մոտ 250 *կմ*²: Հրաբխ. զանգվածի բարձր.՝ 1753 *մ*: Սառցակալած է: Հայտնագործել են 1821-ին՝ Ֆ. Ֆ. Բելինգսհաուզենը և Մ.Պ. Լազարևը:

ՊԵՏՐՈՍ ԱՐԱԳՈՆԱՑԻ (Petrus de Aragonia, ծ. թ. անհտ–1347), փիլ-աստվածաբան, դոմինիկյան քարոզիչ: 1318-ին ***Բարդուղիմեոս Բորնհացու*** և ***Հովհան Անգլիացու*** հետ հայերին կաթոլիկացնելու առաքելությամբ հաստատվել է Սարաղայի դոմինիկյան վանքում, ապա 1330-ին ***Հովհաննես Քռնեցու*** հրավերով տեղափոխվել է Քռնայի վանք: Պ. Ա-ու փիլ–մեկնող. աշխ-ները՝ «Համառօտ վերլուծութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի», «Վերլուծութիւն ի վերայ գրոցն, որ կոչի Պերիարմենիաս», «Համառօտ հաւաքումն վերլուծութեան Վեցից սկզբանց գրոց Ջիլբերտոսի Պոռետացւոյ» ևն, պահպանվել են միայն հայ.՝ իր և Հովհաննես Քռնեցու համատեղ թարգմյամբ: Վերջինիս հետ հայ. է թարգմանել նաև Թովմա Աքվինացու և ուր. մի շարք երկեր: Պ. Ա. նպաստել է Հայաստանի և միջնադար. Եվրոպայի գիտամշակութ. կապերի խորացմանը, հայ փիլ. մտքի աշխուժացմանը, մինչդեռ նրա քարոզչ. աշխ-ը սրել է դավանաբան. վեճերը, խարխլել ազգ-եկեղեց. միասնությունը:

ՊԵՏՐՈՍ ԴԱՄԻԱՆԻ (Petrus Damiani, մոտ 1007–1072), եկեղեց. գործիչ, աստվածաբան, կարդինալ (1057), կաթոլիկ սուրբ: Ձևակերպել է «փիլիսոփայությունը աստվածաբանության աղախինն է» դրույթը: 1828-ին հռչակվել է Եկեղեցու հայր:

ՊԵՏՐՈՍ ԼՈՄԲԱՐԴԱՑԻ (Petrus Lombardus, մոտ 1100–1160), քրիստ. աստվածաբան, փիլ.: Սխոլաստիկայի ներկայացուցիչ: Փարիզի եպս. (1159–ից): Պ. Լ-ու «Մենտենացիաներ» («Խրատաբանություններ») քառահատորը, որտեղ ներառված են հատվածներ եկեղեցու հայրերի ստեղծագործություններից, կաթոլիկ աստվածաբանության առաջին և առավել հեղինակավոր ժող-ն է (մինչև XVI դ-ի սկիզբ), որը մեկնաբանել են միջնադար. բոլոր նշանավոր աստվածաբանները:

ՊԵՏՐՈՍ ՂԱՓԱՆՑԻ (1700-ական թթ.–1784), բանաստեղծ, երգահան: 1753–56-ին եղել է Էջմիածնի միաբան: 1780-ին նշանակվել է Նիկոմեդիայի հայոց թեմի առաջնորդ: Պ. Ղ-ու «Երգարանը» (1772) ամփոփում է 110 երգ–բանաստեղծություն. 36 եղանակավոր երգերի մեծ մասը ներառվել է ժող. երգարաններում: Հրատարակվել է նաև Պ. Ղ-ու «Բանաստեղծություններ» (1960) ժող–ը:

ՊԵՏՐՈՍ ՄԵԾԻ ԾՈՑ, ՌԴ Պրիմորսկի երկրամասի ափերի մոտ: Երկ.՝ 80 *կմ*, լայն. հվ–ում՝ 200 *կմ*: Ենթածոցերն են՝ Ամարյան, Ուսուրիական, Պոսեդան, Ստրելոկ ևն: Նվինգստ–ները՝ Վլադիվոստոկ և Նախոդկա: 1879-ին ծոցում ստեղծվել է Հեռավոր–արլ. արգելոցը:

ՊԵՏՐՈՍ ՆԱԽԻՋԵՎԱՆՑԻ, **Բերդումյանց** (Աղամալյանց, XVIII դ–ի սկիզբ–1784), բանաստեղծ, աստվածաբան, մեկնիչ: Արք. (1759–ից): XVIII դ–ի հայ հոգևոր. բանաստեղծության նշանավոր դեմքերից է: Հեղինակ է քնար., պատմաքնար. պոեմների, բանաստեղծությունների, քառյակների, «Աստուածանմանութիւն» (հրտ.՝ 1827), «Աղբիւր բացեալ» (հրտ.՝ 1845), «Մեկնութիւն Յայտնութեան Ս. Յովհաննու» (հրտ.՝ 1846), «Մեկնութիւն թղթոյն Պօղոսի առ Եփեսացիս» (հրտ.՝ 1850) կրոնափիլ., մեկնող. երկերի: Պ. Ն-ու որոշ անտիպ երկեր պահվում են Մտնդ–ում:

ՊԵՏՐՈՍ ՍԻԿԻԼԻԱՑԻ, IX դ–ի բյուզանդացի մատենագիր, հոգևորական: Վասիլ I կայսեր հրամանով 869–870-ին գլխավորել է բյուզ. պատվիրակությունը պավլիկյանների մոտ (տես ***Պավլիկյան շարժում***): Հեղինակ է պավլիկյանների վերաբերյալ մեծարժեք՝ «Պիտանի պատմություն» աշխ-յան, ինչպես նաև համառոտ մի պատմության և պավլիկյանների գաղափարախոսության դեմ ուղղված 6 «Ճառ»-ի (մեզ են հասել առաջին 2–ը և 3–րդի սկիզբը):

ՊԵՏՐՈՍ ՍՅՈՒՆԵՑԻ, **Պետրոս Քերթող** (ծ. թ. անհտ–մոտ 558), մատենագիր, մեկնիչ, թարգմանիչ, եկեղեց. գործիչ: 547–556-ին՝ Սյունյաց եպս.: Պ. Ս-ու Պատմությունից որոշ հատվածներ պահպանվել են ***Մովսես Կաղանկատվացու*** «Պատմութիւն Աղուանից աշխարհի» և ***Ստեփաննոս Օրբելյանի*** «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխ-ներում: Ամբողջական մեզ են հասել «Գովեստ ի սուրբ Աստուածածին...» ճառը, «Յաղագս հաւատոյ», «Հարցմունք յաղագս մարմնաւորութեանն տեառն զանազանք...» («Արարատ», 1902), «Հարցումն Վաչագանայ իշխանի եւ պատասխան Պետրոսի Սիւնեաց վերադիտողի» (Մտնդ., ձեռ. № 9074) երկերը:

ՊԵՏՐՈՍ ՎԵՆԵՐԱԲԻԼԻՍ (Petrus Venerabilis, մոտ 1094–1156), **Պետրոս Պատվելի**, կաթոլիկ եկեղեց. գործիչ, գիտնական, գրող: Բարեփոխումներ է կատարել վանական. կյանքում, մահմեդականության հերքման նպատակով նպաստել է ***Ղուրանի*** լատ. թարգմ-յանը:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ազնիվ Պետրոսի (1903–1971), կենսաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1957), պրոֆ. (1958): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1965): Աշխ–ները վերաբերում են ՀՀ հողերի մանրէաբան. հետազոտմանը, հողի կառուցվածքի բարելավման, պալարաբակտերիաների էկոլոգ., կենսբ., ֆիզիոլոգ. առանձնահատկություններին:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ալվարդ Բարդուղի (ծ. 1946), գրող, հրապարակախոս, խմբ.: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2007): 1991–94–ին՝ «Առագաստ» շաբաթաթերթի գլխ. խմբ., 1994–98–ին՝ ՀՕՄ–ի Հայաստանի շրջ. կազմ–յան վարչության ատենապետուհի: Հեղինակ է «Երկրի պապերը» (1977), «Թռչնականչ» (1981), «Ես մի ծառ եմ ծիրանի» (1984), «Ապրելու օրենքը» (1989), «Մարդու տունը» (ռուս., 1987), «Խմբերգերի ժամանակը» (2008), «Ապրելու գրո ժամ» (2012) պատմվածքների ու վիպակների ժող–ների: ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան (2011):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Աննա (Անելկա) Գրիգորի (1935–2017), արձակագիր, դրամատուրգ, ռեժ., դերասան: 1985–92–ին՝ «Առասպել» (Գյումրի) դպրաթատրոնի հիմնադիր–ղեկ.: Հեղինակ է «Որպես հացն հանապազօրյա» (1971), «Կումարի Մեծ Տիկնոջ պատմությունները» (1990), «Մերն աշխարհեն խռովել՝ կերթա» (2004), «Մեզ քաղաքի կործանումը» (2004), «Բոլոր ժամանակների Հայաստանը» (հ. Ա–Ջ, 2008–13), «Տունը մոլախոտի մեջ» (2015) վեպերի, «Ինչպես ապրեցինք 20–րդ դարի վերջին տասնամյակներին...» (2011) վիպակների, «Եկա, որ մնամ» (1986) պիեսների ժող–ների:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Աշոտ Գարեգինի (ծ. 1943), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1992): Գարեգին *Պետրոսյանի* որդին: Աշխ–ները վերաբերում են միաբյուրեղների ստացման սկզբունքներին, բարձրջերմաստիճան. բյուրեղների հատկությունների կառավարմանը: Բյուրեղագետների միջազգ. միության (1994), ՌԲՆԳԱ (1998) անդամ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Աշոտ Սեդրակի (ծ. 1956), ՀՀ բանակի գեն–մայոր (1995): 1991–94–ին մասնակցել է ՀՀ և ԼՂՀ շրջանների ինքնապաշտպ. ու ազատագր. մարտերին և ՀՀ բանակաշինությանը: 1993–96–ին՝ ՀՀ պաշտպ–յան նախարարի, ԳԾ պետի տեղակալ: 1996–97–ին՝ ռազմ. ուսումնարանի (ապա՝ ինստ–ի) պետ: 1999–ից՝ «Հայփոստի» գործադիր տնօրեն, 2001–08–ին՝ ՀՀ առևտրի և տնտ. զարգացման նախ–յունում, 2008–ից՝ ՀՀ ԱԻՆ Տեխ. անվտանգության կենտրոնի տնօրեն:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Աշոտ Վեզիրի (1930–1998), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. թեկնածու (1964): Եղել է Երևանի ԱԿՀ ԳՀԻ տնօրեն (1965–70): ԵրՄՄԳՀԻ–ի, Հայաստանում դիսկրետ մաթ–ի և գրաֆների տեսության դպրոցի հիմնադիրներից: Աշխ–ները վերաբերում են հաշվող. տեխնիկայի և կիբեռնետիկայի, ԷՀՄ՝ ավտոմատացված համակարգերի նախագծման մաթ. խնդիրներին: Մասնակցել է թվային համակարգչ. համակարգերի, այդ թվում՝ «Նաիրի» և ԵՄ մակնիշի մեքենաների մշակման և արտադր–յան կազմակերպման աշխ–ներին:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Աստվածատուր Ավետիքի (ծ. 1953), Երկրապահ կամավոր. շարժման կազմակերպիչներից: ՀՀ բանակի գեն–մայոր (1996): 1993–ից՝ ՀՀ պաշտպ–յան նախարարի, 1997–06–ին՝ ԱԻՆ վարչության պետի, 2008–ից՝ ԱԻՆ փրկարար. ծառայության տնօրենի տեղակալ:

ՀՀ «Մարտական խաչ» 1–ին աստիճանի շքանշան, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1–ին աստիճանի մեդալ (2011):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ավագ Գեղամի (1912–2000), երգիչ (դրամատիկ. տենոր): ՀՀ (1956), Ադրբեջանի (1962) ժող. արտիստ: 1941–1989–ին՝ ԵՕԲԹ մեներգիչ (Սանթուր, Սարո՝ Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ», «Անուշ», Տիրիթ՝ Տ. Չուխաճյանի «Արշակ Բ», Կարո՝ Ա. Բաբաևի «Արծվաբերդ», Վահան՝ Հ. Ստեփանյանի «Հերոսուհին», Ռադամես, Մանրիկո՝ Ջ. Վերդիի «Աիդա», «Տրուբադուր», ևն): Համերգ. երկացանկում՝ հայ, ռուս, արևմտաեվրոպացի կոմպոզիտորների երկեր, հայկ. ժող. երգեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Արեգա Միքայելի (ծ. 1948), դերասանուհի: ԼՂՀ վաստ. արտիստ (2004): 1969–ից՝ Վ. Փափազյանի անվ. դրամատիկ. թատրոնի դերասանուհի (Կարինե՝ Ա. Պապայանի «Արտասահմանյան փեսացու», Պոլյա՝ Մ. Գորկու «Քաղքենիներ», Սոնա՝ Շիրվանզադեի «Չար ոգի», Գեղամ՝ «Արցախյան բալլադ»՝ ըստ Վ. Հակոբյանի պոեմի, Կորինկինա՝ Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», ևն):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Արթուր Էմանուիլի (1912–2002), ածխահանքերի աերոգազադինամիկայի և մեթանի հետազոտման ոլորտի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1972), պրոֆ. (1975): ՌԽՖՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1984): Ռուսաստանի հանքարդ–յան պատվ. աշխատող (1995):

Ակադ. Ա. Ա. Սկոչինսկու անվ. մրց. (1976), Լենինի և ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշաններ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Արկադի Աշոտի (1933–2013), գեղանկարիչ: Պրոֆ. (1997): Հեղինակ է կոմպոզիցիաների, դիմանկարների, նատյուրմորտների, թեմատիկ պատկերների, գրաֆիկ. գործերի («Պատկած ֆիգուր», 1966, «Սփռոցով նատյուրմորտ», 1968, «Տարբեր ներկայացումներ», 1974, «Հանդիպում», 1989, «Հեծյալը», 2000, «Հավատքի ճանապարհին», 2001, գրաֆիկ.՝ «Մասունցի Դավիթ», 1968, ևն): «Վահագն Հովնանյան» մրցանակաբաշխության 1–ին մրց. (2003):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Արմեն Եղիշեի (ծ. 1948), բանասեր: Բանասիր. գիտ. դ–ր (2000): Եղիշե *Պետրոսյանի* որդին, Վարդան *Պետրոսյանի* եղբայրը: Հեղինակ է «Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը» (1997), «Հայկական էպոսի հնագույն ակունքները» (1997), «Հայոց ազգածագման հարցեր» և «Արամազդ. կերպար, պաշտամունք, նախատիպեր» (երկուսն էլ՝ 2006) աշխ–ների:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Արշակ Բագրատի (ծ. 1953), շախմատիստ, միջազգ. գրոսմայստեր (1984): Հայաստանի չեմպիոն (1974, 1976, 1978): Հայաստանի հավաքականի կազմում՝ համաշխ. օլիմպիադիայի 3–րդ մրցանակակիր (1993), Հայաստանի հավաքականի ավագ մարզիչ, բրոնզե (2002) մեդալակիր և գավաթակիր (2006): Պ–ի գլխավորությամբ Հայաստանի տղամարդկանց հավաքականը դարձել է Եվրոպայի (1999) չեմպիոն: 1999–ից՝ արտերկրում:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Արև (Արևիկ) Բենիկի (ծ. 1972), նկարչուհի: ՀՀ վաստ. նկարիչ (2015): Բենիկ *Պետրոսյանի* դուստրը: 2005–ից ստեղծագործում է օրգ. ապակու վրա՝ օգտագործելով ոսկե և արծաթե թիթեղներ, խառը տեխնիկա: Հեղինակ է «Արևածաղիկներ» (2005), «Հետադարձ հայացք» (2012, եռանկար), «Միասնության ուժ» (2013, վիտրաժ, ԵԽ–ում), «Դարի ներշնչանքը» (2014, Ֆրեզնոյի Սբ Երրորդություն եկեղեցում) և այլ գործերի: Պ–ի կենսագրությունը և «Մայր Հայաստան» գործը (2013) ընդգրկվել են «Կանայք արվեստում» («Women in art») համաշխ. ալբոմում:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Արֆո (Արփենիկ) Ավետիսի (1909–1985), գրականագետ: Հեղինակ է «Գրականության կուսակցականությունը» (1952), «Ժողովրդի պատմությունը և նրա էպոսը» (նվիրված «Սասնա ծռերին», 1982), համահեղ.՝ «Սովետահայ գրականության պատմություն» (ռուս., 1966) աշխ–ների:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Բազիկ (ծ. թ. անհտ–1918), ազգ–ազատագր. շարժման մարտիկ, ֆիդայի: Մասնակցել է Շատախի հերոսամարտին (1915), գրավել է թուրք. ոստիկանների զորանոցը: 1915–ին Վանից հայերի առաջին գաղթի ժամանակ ապահովել է նրանց անվտանգությունը: Զոհվել է Վանից հայության բռնագաղթի ժամանակ քրդ. ուժերի հարձակումից հայերին պաշտպանելիս:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Բարդուղ Ղազարի (1901–1968), պարտիզան. ջոկատի հրամ. (1943–1945), խորհրդ. բանակի կապիտան, Դիմադրության շարժման գործիչ: Ալվարդ և Սամվել *Պետրոսյանների* հայրը: 1942–ին գերվել է, տեղափոխվել Լեհաստան, այնտեղից՝ Հվ. Ֆրանսիա, մասնակցել Դիմադրության շարժմանը: Փախչելով համակենտրոնացման ճամբարից՝ կազմակերպել է պարտիզան. ջոկատ (հիմնականում՝ հայերից), աչքի է ընկել (1944) մի շարք մարտերում:

ԽՍՀՄ Կարմիր դրոշի, ՀՄՊ 2–րդ աստիճանի, Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» և այլ շքանշաններ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Բենիկ Գեղամի (1939–1996), քանդ.: Արև *Պետրոսյանի* հայրը: Ստեղծել է մոնումենտալ, հաստոց., դեկորատիվ քանդակներ, բազմաթիվ բարձրարվ. մանրաքանդակներ: Գործերից են՝ «Հիրոսիմա» (1976, հարթաքանդակ), «Մահվան մեղեդի» (1980), «Շաքած նուռ» (1995), «Դեյր էզ Զորի ճանապարհին» (1988), «Հանգստացող տիկինը» (1969), «Հովանոցով աղջիկը» (1980), «Լոգանքից հետո» (1984, վերջին երեքը՝ քանդակաշար), «Հալեպյան շարք» (Սիրիայի «Սիս» կենտրոն, 80 թեմատիկ հարթաքանդակներ, 1994):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Գարեգին Բախշիի (1902–1997), մաթ–ի պատմաբան: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1955), պրոֆ. (1964): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (1967): Աշոտ Գ. *Պետրոսյանի* հայրը: Եղել է ԵՊՀ ռեկտոր (1938–41 և 1949–57): Գիտ–յունների պատմության միջազգ. ակադ–ի (Փարիզ) թղթ. անդամ (1965): Աշխ–ները վերաբերում են Հայաստանում մաթ–ի զարգացման պատմությանը (մինչև XVIII դ.):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Գարուշ Պետրոսի (ծ. 1941), ֆիզիկոս, մանկավարժ: Մանկավարժ. գիտ. դ–ր (2001), պրոֆ. (2002): Մանկավարժ. կրթության միջազգ. ԳԱ անդամ (2004): Աշխ–ները վերաբերում են ֆիզիկայի և բնագիտ–յան ուսուցման հարցերին: ՀՀ վարչապետի հուշամեդալ (2006):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Գեղամ Հարությունի (ծ. 1950), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր

(2005), պրոֆ. (2006): Աշխ–ները վերաբերում են Ուկրաինայի և Ռուսաստանի հետ ՀՀ (1918–20) հարաբերություններին և դիվանագիտ. պատմության հարցերին:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Գեորգի Միքայելի (ծ. 1953), քաղ–պետ. գործիչ: 1988–ից՝ Արցախյան շարժման մասնակից: 1992–ի հունվ–1993–ի հունիս՝ ԼՂ ԳԽ փոխնախագահ, ապա՝ նախագահի պաշտոնակատար: 2000–06–ին՝ ԼՂՀ նախագահի խորհրդական, 2007–11–ին՝ ԼՂՀ ԱԳ նախարար:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Գևորգ (իտալ.՝ Giorgio, ծ. 1985), քիքբոքսինգի և տայյան բռնցքամարտիկ: 85 մրցամարտից հաղթել է 84–ում (35–ը՝ նոկաուտով): K–1 MAX մրցաշարի կրկնակի, Glori World Series մրցաշարի Մեծ մրց–ներ: Մարզվում է Իտալիայում (մարզիչ՝ Ալֆիո Ռոմանուտ): 2015–ին հաղթել է Թուրքիայի չեմպիոն Էրիան Վագալին:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Գևորգ Լյուդվիգի (ծ. 1940), մեխանիկոս: Տեխ. գիտ. դ–ր (1984), պրոֆ. (1985): Աշխ–ները վերաբերում են ծակոտկեն նյութերի մեխանիկային, մեքենաների և ալմաստե գործիքների ստացման տեխնոլոգիային:

ՊԵՏՐՈՍՅԱՆ (Տեր–Պետրոսյան) Գևորգ Հովսեփի (1859–1906), դերասան, ռեժ., թատեր. գործիչ: Քրիստափոր *Պետրոսյանի* եղբայրը: 1891–ին Թիֆլիսում հիմնադրել է մշտ. թատերախումբ: Դերերից են՝ Արբենին (Մ. Յ. Լերմոնտովի «Դիմակահանդես»), Պեպո (Գ. Սունդուկյանի «Պեպո»), Օթելլո (Վ. Շեքսպիրի «Օթելլո»), Օգսեն (Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար») ևն:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Դանիել Պետրոսի (ծ. 1957), մեքենագետ: Գղտ. գիտ. դ–ր (2007), պրոֆ. (2010): Աշխ–ները վերաբերում են գղտ. մեքենաշինության տեխնոլոգիայի, մեքենաների նորոգման, արտադր–յունում նորագույն տեխնոլոգիաների ներդրման հարցերին:

Կ. Ա. Տիմիրյազևի անվ. միջազգ. (2005), ՀՀ ԳՆ ոսկե մեդալներ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Դավիթ Վլադիմիրի (ծ. 1957), բանաստեղծ, գրականագետ, մամուլի պատմաբան: Բանասիր. գիտ. դ–ր (2007), պրոֆ. (2011): Հեղինակ է «Գրական բանավեճերը 20–րդ դարասկզբի հայ մամուլում» (2007) աշխ–յան, «Մեր բախտը՝ մեր նժարին» (1989), «Հավատի պտուղ» (1992), «Ուրիշ անունս» (2001) բանաստեղծությունների ժող–ների:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Եղիշե Մանուկի (1912–1982), գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1969), պրոֆ. (1969): Արմեն և Վարդան *Պետրոսյանների* հայրը: Հեղինակ է «Րաֆֆի» (1959), «Հայ գրականություն: Ակնարկներ» (1960), «Գրական դեմքեր» (1977), «Դանիել Վարուժան» (1987) աշխ–ների: Կազմել, ծանոթագրել և հրատարակել է Ռ. Սևակի (1955), Ռ. Որբերյանի (1963), Օ. Չիֆթե–Սարաֆի (1981) երկերի ժող–ները:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Եվգենի Վահանի (ծ. 1945), ռուս. էստրադայի արտիստ, ռեժ.: ՌԴ ժող. արտիստ (1991): Հեղինակային ելույթներում և ներկայացումներում ընդլայնել է մանրապատումների ավանդ. թատրոնի ժանր. սահմանները (պամֆլետ, երաժշտ. նմանակում, ժանր. երգ ևն): Հեռուստահաղորդաշարերից են՝ «Տարբեր տեսանկյունից» (1985), «Հումորի գավաթ» (2002), «Ծիծաղի համայնապատկեր» (1994–ից, հեղինակ) ևն: 1979–ին հիմնադրել է էստրադ. մանրապատումների թատրոն, կից՝ հումորի կենտրոն: ՌԴ «Պատվո շքանշան» (1995):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Երվանդ Մարկոսի (1940–2016), բանաստեղծ, մանկագիր: Հեղինակ է «Պատուհան» (1968), «Անվախճան օր» (1977), «Արագածից Արարատ» (1986), «Գաղտնիքի ծառ» (1991), «Շարժասանդուղքի վրա» (2011) բանաստեղծությունների, «Հեքիաթ մոծակի և փղերի մասին» (1980), «Արևի տոնը» (1983), «Մկնագիրք» (1996), «Կապույտ հեքիաթ» (1998), «Եղանակների կարուսել» (2005), «Գրքերի երամ» (2009) մանկ. բանաստեղծությունների ժող–ների:

ՀՀ Պետ. (1999), ՀԳՄ Ս. Զորյանի անվ. (1989), Վ. Անանյանի անվ. (2006) մրց–ներ, ՀՀ ՄՆ «Գրիգոր Նարեկացի» մեդալ (2015):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Զոյա Սահակի (ծ. 1929), ջութակահար: ՀՀ վաստ. արտիստ (1963): Պրոֆ. (1983): 1953–93–ին՝ Հայֆիլհարմոնիայի մենակատար:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Էդուարդ Հարությունի (ծ. 1932), ավիակոնստրուկտոր: 1956–ից Մոսկվայի Ուղղաթիռաշինության Ն. Ի. Կամովի անվ. ՀԿԲ–ում եղել է գլխ. կոնստրուկտորի տեղակալ: Մասնակցել է Կա–15, –22 (8 համաշխ. ռեկորդ) մարտ. հակասուզանավ., Կա–25, բազմաթիթրախ. Կա–27, տարեղանակային Կա–32 և այլ տիպերի ուղղաթիռների մշակման, ստեղծման և փորձարկման աշխ–ներին: ԽՍՀՄ Պետ. (1981), Ուղղաթիռ. ինդուստրիայի ընկերակցության (2008, «Տարվա կոնստրուկտոր») մրց–ներ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Էդուարդ Հարությունի (ծ. 1948), բժիշկ: Բժշկ. գիտ. դ–ր, պրոֆ.: ՌԴ վաստ. գյուտարար: Զբաղվել է ստամոքսաղիքաբանության, մարսողության օրգանների հետվիրահատ. ախտաբան. վիճակների փորձարար. մոդելավորման, օպերատիվ վիրաբուժության և տեղագր. անատոմիայի հարցերով: ՌԴ Կառ–յան մրց. (1986):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Էմմա Խաչատուրի (ծ. 1934), ազգագրագետ, բանահավաք: Պատմ. գիտ. դ–ր (1989): Աշխ–ները վերաբերում են միջնադար. ժող. թատրոնների, ծիսակատարությունների, ազգագր., դաս. պարերի և այլ խնդիրների: Կազմակերպել է պարի անսամբլներ՝ «Վասպուրական» (1969), «Հասկեր» (1981–89) ևն:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ժիրայր Արամի (1921–1991), դերասան: 1942–46–ին՝ ԵՊՀԹ դերասան, 1946–ից՝ ԵՏԹ դերասան–տիկնիկավար (Համբո՝ «Գիքոր»՝ ըստ Հ. Թումանյանի, Ծիկլո՝ Ա. Այվազյանի «Դիպլիպիտո», Օլե–Լուկոյե՝ Հ. Ք. Անդերսենի «Օլե–Լուկոյե», ևն): Նկարահանվել է կինոյում («Հյուսիսային ծիածան», 1960, «Կարինե», 1967, «Հեղկոմի նախագահը», 1977, երեքն էլ՝ Հայֆիլմ):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ժուդեքս Վաղարշակի (ծ. 1936), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1991), պրոֆ. (1993): ՀՃԱ անդամ: Աշխ–ները վերաբերում են մետաղ. բարակ թաղանթներում էլեկտրոնների օպտիկ. տիրույթում անցում. ճառագայթման հայտնաբերմանը, ֆոտոծնման և ֆոտոտրոհման շարժընթացներում բևեռացման հարաչափերի փորձարար. հետազոտմանը:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Լեոնարդ Գևորգի (1953–1999), պետ–քաղ. գործիչ: 1991–92–ի հունվ–ին՝ ԼՂԻՄ մարզգործկոմի նախագահ, 1992–95–ին՝ ՀՀ հատուկ ծրագրերի վարչության պետ, 1995–98–ին՝ ԼՂՀ վարչապետ, 1997–ի ապրիլ–սեպտ–ին, միաժամանակ՝ ԼՂՀ նախագահի պաշտոնակատար, 1999–ից՝ ՀՀ օպերատիվ կառավարման հարցերով նախարար: Զոհվել է հոկտ. 27–ին՝ ՀՀ ԱԺ–ում տեղի ունեցած ահաբեկչության ժամանակ:

ՀՀ «Մարտական խաչ» 1–ին աստիճանի, ԼՂՀ «Սբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշաններ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Լեոնիդ Գրիգորի (ծ. 1930), երկրաֆիզիկոս: Երկրբ–ինքբ. գիտ. դ–ր (1979), պրոֆ. (1981): ՀՃԱ անդամ: Եղել է ԽՍՀՄ երկրաֆիզիկայի համամիութ. ԳՀԻ Վոլգա–Ուրալյան մասնաճյուղի տնօրեն (1961–64): Աշխ–ները վերաբերում են միջուկ. երկրաֆիզիկային և նավթագազ. հանքավայրերի ուսումնասիրությանը:

ԽՍՀՄ Պետ. (1982), ԳԱՀ Մ. Գուբկինի անվ. (1978) մրց–ներ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Լեոնիկ Նահապետի (ծ. 1959), մանկավարժ: Մանկավարժ. գիտ. դ–ր (2008), պրոֆ. (2012): 2012–16–ին՝ ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի տնօրեն: Աշխ–ները վերաբերում են ֆիզիկայի ուսուցման մեթոդիկային:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Լևոն Գրիգորի (1925–1997), հիդրոմեխանիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1986), պրոֆ. (1989): Աշխ–ները վերաբերում են լարման ոչ համաչափ տենզորով հեղուկների մեխանիկային: Լուծել է խնդիրներ, որոնց արդյունքներով բացահայտվել են դաս. հիդրոդինամիկայի մեթոդներով չբացատրվող մի շարք երևույթներ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Լևոն Հարությունի (1912–1990), հրթիռ. սարքաշինության տեխնիկայի ճարտարագետ: Աշխ–ները վերաբերում են հրթիռատիեզ. համալիրների կառավարմանը և ինքնաշխատ համակարգերի մշակմանը, դրանց մրցունակության բարձրացման հարցերին: Մասնակցել է 1–ին ԵԱՀ–ի արձակման աշխ–ներին:

Լենինյան (1976), ԽՍՀՄ ՆԽ (1982) մրց–ներ, Լենինի (1957), ԽՍՀՄ Կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքաշաններ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Լևոն Հովհաննեսի (ծ. 1940), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1972), պրոֆ. (1973): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (2008): Գոհար *Համբարձումյանի* որդին: 1975–ից՝ Ս. Պետերբուրգի համալսարանում: Աշխ–ները վերաբերում են դիֆերենցիալ և դինամիկ. խաղերի տեսությանը: Դինամիկ. խաղերի միջազգ. ընկ–յան նախագահություն (1994), Ամերիկ. մաթեմատիկոսների ընկ–յան (1995) անդամ:

ՌԴ «Բարեկամության» շքանշան (1999), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2–րդ աստիճանի մեդալ, ՌԴ նախագահի պատվոգիր (2015):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ծովինար Լևոնի (1925–2014), քիմիկոս–տեխնոլոգ: Տեխ. գիտ. դ–ր (1980): Աշխ–ները վերաբերում են կոնյակի և մադերայի տիպի գինու արդ–յան զարգացման, քիմիայի և տեխնոլոգիայի հարցերին: Խաղողագործության և գինեգործության միջազգ. ակադ–ի անդամ (1998), Ֆրանսիայի «Կոնյակի առաջին տիկին» (1972):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Կամո Հայկի (1929–1989), անասնաբույծ: Գղտ. գիտ. դ–ր (1972): Պրոֆ. (1976): Աշխ–ները վերաբերում են ոչխարաբուծության և թռչնաբուծության մթերատվության բարձրացման և մթերքի որակ. բարելավման հարցերին: Պ–ի ղե–

կավարությամբ ստեղծվել է կիսանրբագեղմ ոչխարների նոր տիպ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Կառլոս Խաչիկի (ծ. 1951), ՀՀ ՆԳ գեն–լեյտ. (2000): 1997–99–ին՝ ՀՀ ՆԳՆ և ԱԱՆ քննչ. գլխ. վարչության պետ, 1999–2004–ին՝ ՀՀ ԱԱԾ պետ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Կիրով Հարությունի (ծ. 1938), կիսահաղորդչ. էլեկտրոնիկայի, հաշվող. տեխնիկայի և ԱԿՀ–երի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1991): Մասնակցել է ՀՀ ռազմաօդ. պաշտպ–յան ԳՀ և գործն. աշխ–ներին: Աշխ–ները վերաբերում են կառավարման համակարգերի տես. հիմունքներին և համարժեք մոդելների մշակմանը:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Հակոբ Բաղդասարի (1928–2017), գրականագետ, հրտ–խմբ.: Բանասիր. գիտ. թեկնածու (1986): 1972–95–ին՝ ԵՊՀ հրտչ–յան (ընդհատումներով) գլխ. խմբ.: Հեղինակ է «Գեղամ Տեր–Կարապետյան (Մշո Գեղամ)» (1983), «Սէյլան (Արշակ Մադոյեան): Կեանքը եւ ստեղծագործութիւնը» (2011) աշխ–ների, համահեղ.՝ «ԵՊՀ հրատարակչություն: Մատենագիտություն. 1920–2011» (2011) գրքի:

ԵՊՀ ոսկե մեդալ (1999):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Հայկ Հմայակի (ծ. 1954), մանկավարժ: Մանկավարժ. գիտ. դ–ր (2011), պրոֆ. (2012): Աշխ–ները վերաբերում են մասնագիտ. կրթության որակի ապահովման գործում մանկավարժ. տեխնոլոգիաների տեսության ու պրակտիկայի, կրթ. չափորոշիչների ձևավորման հարցերին:

ՀՀ ԿԳՆ ոսկե մեդալ (2004):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Հասմիկ Սամսոնի (ծ. 1950), նյութագիտ–յան բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (2002), պրոֆ. (2005): Աշխ–ները վերաբերում են մետաղալարերով ամրանավորված մետաղ. բաղադրյալ նյութերի կառուցվածք. վերլուծությանը, հատկություններին և կիրառության հարցերին:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Հովհաննես Մնացականի (1892–1961), մատենագետ, մամուլի տեսաբան: 1934–35–ին՝ Կոմ. համալսարանի ռեկտոր, 1937–41 և 1945–61–ին՝ ՀԽՍՀ գրապալատի տնօրեն: Կազմել է «Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիա», «Հայկական սովետական գրականություն» (երկուսն էլ՝ համահեղ., 1941), «Սովետահայ գեղարվեստական գրականության բիբլիոգրաֆիա» (1949), «Հայ գրականության բիբլիոգրաֆիա» (1953), «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա» (հ. 1–3, 1954–57), «Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա» (1958) մատենագիտ. աշխ–ները, «Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ» (1960) կենսամատենագիտ. ժող–ը:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Հրանտ Զինավորի (1927–2001), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ–ր (1973), պրոֆ. (1978): Հեղինակ է «Գոյականի առումները հայերենում» (1960), «Անվանարկներ հայերենի պատմական ձևաբանության» (1976) և այլ աշխ–ների: Կազմել է «Լեզվաբանական բառարան» (1975), «Հայերենագիտական բառարան» (1987):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Հրանտ Պետրոսի (1923–1987), հողագետ: Հողագիտ–յան և ագրոքիմիայի ԳՀԻ (այժմ՝ կենտրոն) հիմնադիր–տնօրենը (1958–87): Աշխ–ները վերաբերում են աղուտ–ալկալի և գերխնավ հողերի բարելավման ու աղակալման հարցերին: Պ–ի մշակած աղուտ հողերի բարելավման քիմ. եղանակը 1962–ից՝ ներդրվել է արտադր–յան մեջ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Հրաչյա Սարգսի (1917–1999), տնտեսագետ: Տնտեսագիտ. գիտ. դ–ր (1971), պրոֆ. (1972): Աշխ–ները վերաբերում են առևտրի տնտեսագիտ–յան, ծառայությունների ոլորտի և աշխատաժամանակի օգտագործման արդյունավետության հարցերին:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Սադաթ (1867–1944), գրող: ՎԽՍՀ աշխ. հերոս (1928): Հեղինակ է «Մի կտոր հացի համար» (հրտ.՝ 1903), «Բանվորը», «Կապույտ շապիկը», «Բանտում», «Նոր դարբնոց» (1925), «Պիոներները հնգամյակում» (1932), «Փոքրիկ մեքենավարը» (1934) պատմվածքների, «Մանկություն» (1935) վիպակի, «Հաղթված մահը», «Ճակատագրին», «Մարտը» և այլ արձակ բանաստեղծությունների:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Մարիա Իսահակի (1911–1971), փիլ.: Փիլ. գիտ. դ–ր (1964), պրոֆ. (1965): Աշխ–ները վերաբերում են սոցիալ. փիլ–յան, հատկապես՝ հումանիզմի հարցերին («Հումանիզմ», 1964, ռուս.):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Մարիամ (Մանիկ) Ենոքի (1912–1993), նկարչուհի: 1939–42–ին՝ Բաքվի հայկ. թատրոնի բեմանկարիչ: Հեղինակ է զգեստների էսքիզների (1950–70), ձևավորել է բեմադրություններ Դաղստանի թատրոնում, ԵՌԹ–ում, ԵԳԹԻ–ում: Ստեղծել է գեղանկարչ. գործեր («Գեղամիկը», 1973, «Հայաստան», 1970–74, նկարաշար, «Եղիցի լույս», 1968, ևն):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Սաթսել Հայկազի (ծ. 1948), գրող, լրագրող, խմբ.: ԼՂՀ վաստ. լրագրող (2008): 1995–96–ին՝ ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի փոխնախարար, 1998–2004–ին՝ «Մարտիկ» շաբաթաթերթի, 2004–08–ին՝ «Ազատ Արցախ» օրաթերթի գլխ. խմբ.: Հեղինակ է մանկ. պատմվածքների, պիեսների, հեքիաթների ժող–ների:

ԼՂՀ Եղիշեի անվ. մրց. (2006), «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» (2002), «Ընտասիր ծառայության համար» (2004), «Մխիթար Գոշ» (2011) մեդալներ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Մարտին Վիրաբի (ծ. 1936), գեղանկարիչ: ՀԽՍՀ վաստ. նկարիչ (1976): Գործերից են՝ «Նատյուրմորտ» (1961), «Սայաթ–Նովա» (1963), «Ընկերուհիներ» (1967), «Զոհաբերություն» (1968), «Տղաներ» (1967–70), որտեղ նկատելի են կերպավորման ազատությունը: 1980–90–ական թթ–ին ստեղծել է միագույն, «խամրած»՝ թափանցիկ կոլորիտով կտավներ («Մուտք Երուսաղեմ», 1983, «Իմ սիրելի Արարատը», 1990): Հեղինակ է նաև գրաֆիկ. թերթերի («Կնոջ աշխարհը», 1963, «Առևանգում», 1974, ևն), գրքերի ձևավորումների:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Մարտիրոս Երվանդի (ծ. 1952), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1992), պրոֆ. (1992): Աշխ–ները վերաբերում են արտադր. սարքավորումների և աշխ. պաշարների օգտագործման արդյունավետության, շուկայական մեխանիզմի ձևավորման, նյութ. խթանման գործող համակարգերի և դրանց զարգացման հարցերին:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Միհրան Կարապետի (1909–1960), ԽՍՀՄ նավատորմի փոխծովակալ (1959): 1939–ից՝ «Սևաստոպոլ» հածանավի 1–ին հրետ. դիվիզիոնի հրամ.: Մասնակցել է ՀՄՊ–ին: ԽՍՀՄ Կարմիր դրոշի, Կարմիր աստղի (2) շքանշաններ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Միսակ Ալեքսանդրի (1891–1946), կրթության գործիչ, ճարտարագետ: 1932–37–ին՝ Հայարդնախագիծ ինստ–ի կառավարիչ, 1937–46–ին՝ ԵՊԻ ռեկտոր:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Յուրի Աշոտի (1930–2011), պատմաբան–արևելագետ: Պատմ. գիտ. դ–ր (1970), պրոֆ. (1971): ՌԴ գիտ. վաստ. գործիչ: 1963–66–ին՝ ԽՍՀՄ ԳԱ Լենինգրադի բաժանմունքի պատմության ինստ–ի տնօրեն: Աշխ–ները վերաբերում են XIX դ–ում և XX դ–ի սկզբին օսմ. բարեփոխումների պատմությանը, 1860–70–ական թթ–ի «*նոր օսմաններ*» շարժման և երիտթուրքերի գաղափարախոսության հարցերին:

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի, Ժողդ–նեբրի բարեկամության և «Պատվո նշան» շքանշաններ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Յուրի Գուրգենի (ծ. 1941), քանդ.: ՀՀ վաստ. նկարիչ (2012): Ստեղծել է դիմաքանդակներ, թեմատիկ հորինվածքներ, մանրաքանդակներ, գրաֆիկ. թերթեր: Ուշագրավ են «Կենաց ծառ» (1977) մոնումենտալ քանդակը, Ա. Խաչատրյանի (1979), Հ. Այվազովսկու (2003) հուշարձանները (երկուսն էլ՝ Երևանում), «Գովք հողին» (1983), «Ողբ» (1986), «Զարթոնք» (1991) և այլ գործեր:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Յուրի Սամվելի (ծ. 1924), սրտաբան: Բժշկ. գիտ. դ–ր, պրոֆ.: ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ: Մշակել և ներդրել է ներսրտային հետազոտության բարդ մեթոդներ (ձախ փորոքի և ձախ նախասրտի ընդծակում, ձողարկմամբ՝ սրտի կենսազննում, պսակաանոթագրություն): Աշխարհում էմբոլացման մեթոդով առաջինն է կատարել պսակաձև զարկերակի բնական խուղակի փակում՝ ձախ փորոքի խոռոչի միջոցով: ԽՍՀՄ Պետ. մրց.:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Շահեն Նիկոլայի (1912–1999), իրավաբան: Իրավաբ. գիտ. դ–ր (1972), պրոֆ. (1974): ՀԽՍՀ վաստ. իրավաբան (1971): Աշխ–ները վերաբերում են խորհրդ. պետության և իրավունքի պատմության հարցերին:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Շուշան Սամվելի (ծ. 1967), երգչուհի: ՀՀ վաստ. արտիստ (2006): Սամվել *Պետրոսյանի* և Արաքս *Մանասյանի* դուստրը: Էստրադայում հանդես է գալիս 1989–ից (հեռուստածրագիր, Փարիզ): Մասնակցել է «Այո» (Գլխ. մրց., 1994, Երևան) երաժշտ. ծրագրին, «Միսս Սոուլ» (Մեծ մրց., 1992, Երևան), «Բրավո, Հայաստան» (1994, ԱՄՆ), «Էքսպո–2000» (Հաննովեր), «Իստ Օստ» (2000, Ֆրանսիա) և այլ փառատոների:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Պետրոս Հակոբի (1968–2012), գեղանկարիչ: Գործերից են՝ «Ծառահատում» (1994), «Թախիծ» (1997), «Եղերերգություն» (1997), «Յուրտ հիշողություն» (1998), «Մոլորակի միայնակ մարդը» (1999), «Տիրամայրը» (1997, 2001), «Խաչելություն» (1998, 2001), «Ադամ և Եվա» (2002) ևն:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Պետրոս Պավելի (1899–1962), ճարտարագետ–տեխնոլոգ: Տեխ. գիտ. դ–ր (1948), պրոֆ. (1949): Աշխ–ները վերաբերում են մետաղագիտ–յան, մետաղների մշակման տեխնոլոգ. շարժընթացների կատարելագործման հարցերին:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ռաֆիկ Գարեգինի (ծ. 1940), իրավաբան: Իրավաբ. գիտ. դ–ր (2002), պրոֆ. (2002): Աշխ–ները վերաբերում են քաղ. դատավարության իրավունքի ինդիրներին:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ռոբերտ Ենոքի (1940–1998), մանկաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (1994), պրոֆ. (1995): Աշխ-ները վերաբերում են մանկ. երիկամաբանության, պարբեր. հիվանդության ժամանակ երեխաների ներքին օրգանների ախտաբանության խնդիրներին:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ռոզա (Քնարիկ) Արսենի (ծ. 1924), գրող: Հեղինակ է «Սրտի ճամփա» (1958), «Սիրո տավիղ» (1962), «Ցրագմենտ իմ Զվարթնոցից» (1978), «Ինքնանկար» (1988) բանաստեղծությունների ժող-ների, «Իմ առասպելը» (1996), «Գրիգոր Լուսավորիչ և Տրդատ արքա» (2002) պոեմ-ների, «Տարբեր ճակատագրեր» (1959) պատմվածքների, «Ճերմակ թռչուններ» (1974) վիպակների և պատմվածքների ժող-ների, «Աշխարհի լույսն ու մութը» (հ. 1, 2, 1982, 1985) վեպի, «Փոքրիկ, բարի կախարդուհին» (1976) վիպակի:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Սամվել Բարդուղի (1941–2012), գեղանկարիչ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2009): Բարդուղ ***Պետրոսյանի*** որդին, Ալվարդ ***Պետրոսյանի*** եղբայրը, Շուշան ***Պետրոսյանի*** հայրը: Հեղինակ է բնա-նկարների, դիմանկարների, նատյուր-մորտների, կրոն., պատմ. թեմաներով մոնումենտալ հորինվածքների («Արա-գիլներ», 1992, «Դեպի երկիր», 2001, ևն): Նկարաշարեր է ստեղծել Դետրոյտի Սբ Սարգիս (1977, 15 պատկեր) և ԱՄԷ Շար-ժա ք-ի Սբ Գրիգոր Լուսավորիչ (1998, 11 պատկեր) եկեղեցիների համար:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Սամվել Գարեգինի (ծ. 1951), քանդ.: ՀՀ վաստ. նկարիչ (2014): Գործերից են՝ «Պարույր Սևակ», «Միեր Մկրտչյան» (երկուսն էլ՝ 1986) դիմաքան-դակները, Մ. Նալբանդյանի կիսանդրին, «Դպրություն» և «Հոգևոր մշակույթի մու-սաներ» (1992) խորաքանդակները, «Մես-րոպ Մաշտոց» և «Մովսես Խորենացի» (1994) բարձրաքանդակները, «Խրիմյան Հայրիկ» (2001), «Շառլ Ազնավուր» (2001) և այլ հուշարձաններ: ՀԼԿԵՄ մրց. (1985):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Սարգիս Գարեգինի (ծ. 1942), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (2001): Աշխ-ները վերաբերում են Ախուր-յանի ավազանի մ. թ. ա. I հզ-ամյակի բնակչության էթնիկին կազմին, պաշտա-մունքային հարցերին:

ՀՀ վարչապետի ոսկե հուշամեդալ (2014), ՀՀ ԳԱԱ վաստակագիր (2017):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Սերգեյ Լևոնի (ծ. 1948), ստոմատոլոգ: Տեխ. գիտ. դ-ր (1993), պրոֆ. (1994): ՌԴ վաստ. բժիշկ (1996): Աշխ-ները վերաբերում են բազմապրո-ֆիլ բժշկ. հիմնարկների ինքնաշխատ կառավարման համակարգերի մշակմանն ու ներդրմանը, բժշկ. բարձր տեխնոլո-գիաների վրա հիմնված ախտորոշման ու բուժման շարժընթացների լավարկման խնդիրներին: Վորոնեժի մարզի սոցիալ. և բժշկության ոլորտների կառավարման միջբուհ. ամբիոնի հիմնադիր-ղեկ.:

ՌԲՆԳԱ (1994), ՌԴ բժշկատեխ. ակադ-ի (1994) անդամ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ստեփան Գրիգորի (ծ. 1951), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1991), պրոֆ. (2005): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2010): 2008–11-ին՝ ՀՀ սփյուռքի փոխ-նախարար: Աշխ-ները վերաբերում են կիսահաղորդչ. անհամասեռ պինդ լու-ծույթների էլ., օպտիկ. և լուսաէլ. հատ-կություններին, ցածր չափայնությամբ քվանտ. նանոկառուցվածքներում հպու-մային և անհավասարակշիռ երևույթների տեսությանը, նանոէլեկտրոն. սարքերի ֆիզ. հիմունքներին:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2013), վարչապետի հուշամեդալ (2011):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Սուրեն Գրիգորի (1916–1996), միլիցիայի փոխգնդ.: ԽՄ հերոս (1944): 1943-ին՝ Դնեպրի գետանցման ժամանակ, եղել է օդադեսանտ. գումար-տակի հրամ., 2 ամիս գործել է թշնամու թիկունքում, նպաստել խորհրդ. զորքերի ռազմ. գործողությունների հաջող ելքին, որի համար էլ արժանացել է հերոսի կոչ-ման: 1946-ից՝ ՀԽՍՀ ՆԳՆ համակարգում:

Լենինի, ԽՍՀՄ Կարմիր դրոշի, Կարմիր աստղի, ՀՄՊ 1-ին աստիճանի շքանշան-ներ, «Ոսկե աստղ», «Մարտական վաս-տակի համար» (1952) մեդալներ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Վազգեն Ազատի (ծ. 1942), քիմիկոս: Քիմ. գիտ. դ-ր (1995): Աշխ-նե-րը վերաբերում են ամիդային լուծիչների առկայությամբ պոլիմեր-նմանակ փո-խարկումներով նոր բարձրմոլ. միացութ-յունների սինթեզին, որոնց հիման վրա ստեղծվել են պոլիմեր. սոսինձներ:

Էկոլոգիայի միջազգ. ակադ-ի (1996), ՌԲՆԳԱ (1998) անդամ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Վալերի Սամսոնի (ծ. 1942), քիմիկոս: Քիմ. գիտ. դ-ր (1979), պրոֆ. (1983, 2007-ից՝ ՄՊՀ պատվ. պրոֆ.): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (2008): Աշխ-ները վերաբերում են մետաղօրգ. միացութ-յունների քիմիային:

ՌԲՆԳԱ անդամ (1990), Մագնիս. ռեզո-նանսի միջազգ. խորհրդի անդամ (1994):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Վահե Արմենակի (ծ. 1938), աստղագետ: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1967), պրոֆ. (1980): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (2008): ԱՄՆ Ստանֆորդի համալսարանի Տիեզերաբան. գիտ-յունների կենտրոնի նախագահ և աստղագիտ-յան ծրագրի տնօրեն (1980-ից): Աշխ-ները վերաբե-րում են գալակտիկաների ու քվազարնե-րի էվոլյուցիային, բարձր էներգիաների աստղաֆիզիկային (ջերմ. մասնիկների արագացում, ճառագայթում և տեղա-փոխում):

Միջազգ. (1983), Ամերիկ. (1980), Հայկ. աստղագիտ. միությունների անդամ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Վարդան Եղիշեի (ծ. 1959), դերասան: Եղիշե ***Պետրոսյանի*** որդին, Արմեն ***Պետրոսյանի*** եղբայրը: «Ոզնի-ներ» թատրոնի հիմնադիր և գեղ. ղեկ. (1988–92): Հանդես է գալիս հիմնականում «Մեկ մարդու շոու» ներկայացումներով (երբեմն՝ այլ դերասանների հետ)՝ «Մեր քեռին ձեր բակում» (1997), «Ծերունին և սովը» (Խ. Աբրահամյանի հետ, 1999), «Խաղում ենք 1700» (2001), «Ցմահ բան-տարկյալներ» (2004), «Վերելք» (2005), «Ինչ անել» (2006), «Պարոնայք 50–50» (2012), «Ամեն երկուշաբթի» (2013) ևն: Նկարահանվել է «Կյանք ու կոիվ» ֆիլ-մում (2016):

ԹՄՄ «Վահան Թեքեյան» մրց. (2007):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Վարդգես Համազասպի (1932–1994), գրող, հրապարակախոս, խմբ.: 1961–66-ին՝ ***«Պիոներ կանչ»*** թերթի խմբ., 1967–75-ին՝ ***«Գարուն»*** ամսագրի, 1994-ին՝ «Երկիր Նաիրի» շաբաթաթեր-թի հիմնադիր-խմբ.: 1981–88-ին՝ ՀԳՄ նախագահ: Հեղինակ է «Անավարտ դիմանկարներ» (1963), «Հայկական էս-քիզներ» (1969) էսսեների, «Քաղաքի կի-սաթաց լուսամուտները» (1964), «Ապրած և չապրած տարիներ» (1970), «Դեղատուն Անի» (1973), «Վերջին ուսուցիչը» (1980) վիպակների ժող-ների, «Մենավոր ընկու-զենին» (1981, կինոնկար՝ 1986), «Կրակե շապիկ» (1986) վեպերի, «Հավասարում բազմաթիվ անհայտներով» (1977) հրա-պարակախոս., ուղեգր., գրաքննադատ. նյութերի ժող-ի: ՀԽՍՀ Պետ. մրց. (1979):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Վիլյամ Ներսեսի (ծ. 1938), քանդ.: Հեղինակ է մոնումենտալ քան-դակների («Նժդեհ», 1996, «Փյունիկ», 1989, «Հովազ», 1997, «Լիլիթ», 1997, Կո-միտասի կիսանդրին, 2005, ևն):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Վլադիմիր (Օհան) Գեղամի (ծ. 1941), քանդ.: ՀՀ վաստ. նկարիչ (1991): Պ-ի բազմաժանր գործերին («Ա. Սպեն-դիարյան», 1975, «Դոն Քիշոտ», 1971, «Հ. Մաթևոսյան», 1985, «Սոսե Մայրիկ», 1987, մարշալ Բաղրամյանի կիսանդրին, 1997) բնորոշ են հոգեբ. նուրբ գծերի բացա-հայտումը, պլաստիկ զուսպ ձևերի ներ-դաշնակումը:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Վլադիմիր Տիգրանի (ծ. 1939), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (1983), պրոֆ. (1985): Աշխ-ները վերա-բերում են ներարտադր. պլանավորման կատարելագործման, կառավարման, դրանցում մաթ. մեթոդների և մոդելների դիտարկման հարցերին:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Վրեժ Գևորգի (ծ. 1951), կինոօպերատոր: ՀՀ արվ. վաստ. գոր-ծիչ (2009): Գեղ. ֆիլմերից են՝ «Ապրիլ» (1985), «Ձայն բարբառոյ...» (1991, Ա. Մել-քումյանի հետ) ևն, վավերագր.՝ «Անտա-ռային հոսպիտալ» (1993), «Արցախյան օրագիր N 1» (համահեղ., 1995), «Անվերջ ձգվող դասամիջոց» (1996) ևն: ՀՀ նախա-գահի (2011), «Վահագն» (2001) մրց-ներ, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Տիգրան Վարդանի (1929–1984), շախմատիստ: Փիլ. գիտ. թեկնածու (1968): Միջազգ. գրոսմայստեր (1952), ԽՍՀՄ ս. վ. վ. (1950): Աշխարհի շախմատի կրկնակի (1963–66 և 1966–69) չեմպիոն: 1984-ից Երևանում պարբերաբար անց-կացվում է Պ-ի անվ. հուշամրցաշար, նրա անունով է կոչվել Հայաստանի շախմատի կենտր. տունը:

ԽՍՀՄ Ժողգ-ների բարեկամության (1981) և «Պատվո նշան» (1965), «Աշխա-տանքային արիության համար» (1957) շքանշաններ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Բաֆֆի (ծ. 1925), ֆրանսա-հայ դաշնակահար, դիրիժոր: Նրա համար երկեր են գրել Մ. Բելյարը, Ա. Կուգելը, Պ. Լոնտրեն և ուր.: Հանդես է եկել հանրա-հայտ դիրիժորներ Ժ. Ֆուրնեի, Ա. Ամելի և ուր. հետ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Քաջիկ (ծ. թ. անհտ–1918), ազգ-ազատագր. շարժման մարտիկ, ֆիդայի: Գործել է ***Նիկոլ Դումանի***, ***Վազ-գենի*** հետ, մասնակցել է 1915-ի Շատախի հերոսամարտին: Վանից հայերի 1-ին գաղթի ժամանակ (1915) ապահովել է նրանց անվտանգությունը:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Քրիստափոր Հայրապետի (1889–1961), օրթոպեդ-վնասվածքաբան, վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (1943), պրոֆ. (1936): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1956): Օրթոպեդիայի և վնասվածքաբանության հիմնադիրը Հայաստանում: Ստեղծել է (1930) առաջին օրթոպեդ. բաժանմունքը, օրթոպեդ. կոշիկի և պրոթեզների ար-հեստանոց: Առաջարկել է ոսկրահատ-ման վիրաբուժ. սեղան, ծռաթաթության օրթոպեդ. կոշիկ, վաղմանկ. հասակում ազդրի բնածին հոդախախտի բուժման, դժվարաշարժ հոդերի ֆունկցիայի վե-

րականգնման հարմարանքներ ու սարքավորումներ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ (Տեր-Պետրոսյան) Քրիստափոր Հովսեփի (1866–1915/16), դերասան, ռեժ.: Գևորգ ***Պետրոսյանի*** եղբայրը: 1890-ից Թիֆլիսի ռուս. թատրոնում մարմնավորել է դրամատիկ. դերեր (Գոդունով՝ Ա. Ն. Օստրովսկու «Վասիլիսա Մելենտևա», ևն): Մասնակցել է Մոսկվայի Արվ-ի և գրկ-յան ընկ-յան թատերախմբի ներկայացումներին (Յագո՝ Շեքսպիրի «Օթելլո», ևն), 1902-ին՝ Քիշնևի ռուս. թատրոնի դերասան:

ՊԵՏՐՈՍՅԱՆՆԵՐ, կրկեսի արտիստների ընտանիք: **Սոս** (Իոսիֆ) **Հրաչիկի Պ.** (ծ. 1948), ձեռնածու, ռեժ.: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2017): Պրոֆ. (2006): 1970-ից՝ Հայաստանի կրկես. կոլեկտիվի արտիստ (1985-ից՝ գլխ. ռեժ., 1997-ից՝ գեղ. ղեկ., 2003-ից, միաժամանակ՝ տնօրեն): Հեղինակ է կրկես. մի շարք համարների և թեմատիկ ներկայացումների, նաև «Հայկական կրկես, կրկեսի Սոսերը» (2008), «Հայկական կրկեսը» (2017) գրքերի: Համամիութ. առաջին մրցույթի 1-ին մրց. (1991, Մոսկվա): Դուստրը՝ **Նաիրա Պ.** (ծ. 1974), աճպարար, կենդանավարժ, ստեղծել է «Կենդանիների աշխարհում» համարը: Որդին՝ **Սոս Պ. Կրտսեր** (ծ. 1972), ձեռնածու, աճպարար, կինը՝ **Վիկտորիա Պ.** (ծ. 1978), աճպարար, միասին հանդես են գալիս աշխարհի ճանաչված կրկեսներում. «Կերպարանափոխություն» համարով սահմանել են աշխարհի քառակի (2008–12) ռեկորդ. գրանցվել «Գինեսի ռեկորդների գրքում»: Սոս Պ. Կրտսերի և Վիկտորյա Պ-ի որդիները՝ **Սոս Պ.** (ծ. 1996), աճպարար, 10 միջազգ. մրցույթների դափնեկիր (աճպարարների աշխարհի առաջնության գլխ. մրց., 2012, Հռոմ, ևն), և **Տիգրան Պ.** (ծ. 1999), աճպարար, միջազգ. մրցույթների դափնեկիր (աճպարարների միջազգ. մրցույթի Գլխ. մրց., 2016, Մյունխեն):

ՊԵՏՐՈՍՅԱՆՑ Անդրանիկ Մելքոնի (1906–2005), ատոմ. և միջուկ. էներգետիկայի բնագավառի մասնագետ, պետ. գործիչ: Ճարտարագիտատեխ. ծառայության գնդապետ (1944): Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1955), պրոֆ. (1957): ՀՀ ԳԱԱ ակադ. (1982, թղթ. անդամ՝ 1977-ից): Սոց. աշխ. հերոս (1962): 1962–82-ին՝ ԽՍՀՄ ատոմ. էներգիայի օգտագործման պետ. կոմիտեի նախագահ: Աշխ-ները վերաբերում են ԱԷԿ-ների, ջերմաէներգետիկ. սարքավորումների լավարկման, ճառագայթ. իրադրության ուսումնասիրման հարցերին: Գրենոբլի (Ֆրանսիա) համալսարանի պատվ. (1947), Շվեդիայի ճարտարագիտ. գիտ-յունների թագավոր. ակադ-ի (1977) անդամ:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1949), Լենինի (6), Կարմիր աստղի (2), Հոկտ. հեղ-յան, Կուտուզովի 1-ին աստիճանի, Աշխ. կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքանշաններ:

ՊԵՏՐՈՍՅԱՆՑ Աշոտ Հովհաննեսի (1910–1978), կոմպոզիտոր, դիրիժոր, երաժշտագետ: Ուզբ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1950): պրոֆ. (1970): Ուզբ. ֆիլհարմոնիայի ժող. գործիքների առաջին մասնագիտ. նվագախմբի հիմնադիրներից (1938–41-ին՝ գեղ. ղեկ., 1943–58-ին՝ գլխ. դիրիժոր): Փոխադրել, գործիքավորել է երաժշտ. գործեր, 1935-ից վերակառուցել և կատարելագործել է միջինասիական ժող. գործիքներ, ստեղծել դրանց տարատեսակներն ու ընտանիքները, գործիքերաժշտության մեջ ներդրել բազմաձայնություն: ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ՊԵՏՐՈՍՈՎ, Իվան Խորենի (1931–1999), երկրաբան: Երկրբ-հնքբ. գիտ. դ-ր (1985): Աշխ-ները վերաբերում են քարագիտության, նստվածքապարների հանքաբանության և երկրաֆիզիկայի, ոչ մետաղ. օգտ. հանածոների հարցերին:

ՊԵՏՐՈՎ, Անդրեյ Նիկոլաևիչ (1837–1900), ռուս ռազմ. պատմաբան, գեն-լեյտ. (1898): Աշխ-ները վերաբերում են XVIII–XIX դդ-ի ռուս-թուրք. պատերազմներին:

ՊԵՏՐՈՎ, Բորիս Նիկոլաևիչ (1913–1980), ավտոմատ կառավարման ոլորտի ռուս գիտնական, տիեզերագիտ-յան հիմնադիրներից: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1960, փոխնախագահ՝ 1979-ից): Սոց. աշխ. հերոս (1969): Աշխ-ները վերաբերում են ԱԿՀ-երի ինվարիանտությանը, շարժվող օբյեկտների ավտոմատ կառավարման, ինքնալարվող համակարգերին: Լենինյան (1966), ԽՍՀՄ Պետ. (1972) մրց-ներ:

ՊԵՏՐՈՎ, Գրիգորի Սեմյոնովիչ (1886–1957), ռուս քիմիկոս-տեխնոլոգ: Ռուսաստանի գիտ-յան և տեխ. վաստ. գործիչ (1957): Առաջարկել է արդ-յան մեջ օգտագործել սուլֆոթթուների խառնուրդ՝ Պ-ի հպակ: Առաջինն է ստացել կարբոլիտ պլաստմասսան: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943, 1949):

ՊԵՏՐՈՎ, Իվայլո (1923–2005), բուլղար գրող: Հեղինակ է «Նոնկայի սերը» (1956, հրտ.՝ 1961, հայ.՝ 1961), «Նախքան ծնվելս և դրանից հետո» (1968) վիպակների, XX դ-ի բուլղ. գյուղի կյանքին նվիրված «Գայլերի շուրջկալ» (1982), «Մահվան դատավճիռ» (1991) և այլ վեպերի, «Մկրտություն» (1953), «Երազանքների գույնը» (1998) և այլ պատմվածքների ժող-ների:

ՊԵՏՐՈՎ, Իվան Եֆիմովիչ (1896–1958), խորհրդ. զորապետ, բանակի գեն. (1944): ԽՄ հերոս (1945): ՀՄՊ-ի ժամանակ ղեկավարել է բանակներ, եղել է 1-ին Ուկր. ռազմաճակատի շտաբի պետ: 1955–56-ին՝ Ցամաք. զորքերի գլխ. հրամ-ի 1-ին տեղակալ:

ՊԵՏՐՈՎ, Նիկոլայ Նիկոլաևիչ (1876–1964), ռուս վիրաբույժ: Գիտ. դպրոցի ստեղծողներից և ուռուցքաբանության հիմնադիրներից ԽՍՀՄ-ում: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1939), ԲԳԱ ակադ. (1944): Սոց. աշխ. հերոս (1957): Լենինգրադի ուռուցքաբանության ինստ-ի (1966-ից՝ Պ-ի անվ.) կազմակերպիչ-ղեկ.: Աշխ-ները վերաբերում են փորձարար., տես. և կլինիկ. ուռուցքաբանությանը: ԽՍՀՄ Պետ. (1942), Լենինյան (1963) մրց-ներ:

ՊԵՏՐՈՎ, Ռեմ Վիկտորովիչ (ծ. 1930), ռուս իմունաբան: ՌԳԱ ակադ. (1984, փոխնախագահ՝ 1988–2001-ին), ՌԲԳԱ (1978) և ՌԳԳԱ (1991) ակադ.: Աշխ-ները վերաբերում են ոչ վարակ. իմունաբանությանը և իմունագենետիկային: Հիմնավորել է իմուն. պատասխանի ֆենոտիպային շտկման սկզբունքները, որոնք դարձել են բարձրիմուն. վակցինաների ստեղծման հիմքը:

ՊԵՏՐՈՎ, Վասիլի Իվանովիչ (1917–2014), խորհրդ. զորապետ: ԽՍՀՄ մարշալ (1983): ԽՄ հերոս (1982): Մասնակցել է ՀՄՊ-ին: 1976-ից՝ Ցամաք. զորքերի գլխ. հրամ-ի 1-ին տեղակալ: 1980-ից՝ Ցամաք. զորքերի գլխ. հրամ., ԽՍՀՄ պաշտպ-յան նախարարի տեղակալ: 1985–86-ին՝ 1-ին տեղակալ:

ՊԵՏՐՈՎ, Վասիլի Վլադիմիրովիչ (1761–1834), ռուս ինքնուս ֆիզիկոս, էլեկտրատեխնիկ: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1809): Իր պատրաստած գալվան. մարտկոցի միջոցով հայտնագործել է (1802) էլ. աղեղը:

ՊԵՏՐՈՎ, Վլադիմիր Միխայլովիչ (1896–1966), ռուս. կինոռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1950): Նկարահանել է «Ամպրոպ» (1934), «Պետրոս I» (1937–39), «Կուտուզով» (1944), «Ստալինգրադի ճակատամարտ» (1949), «Մենամարտ» (1957), «Ռուսական անտառ» (1964) և այլ ֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1946-ին՝ կրկնակի, 1950):

ՊԵՏՐՈՎ, Վլադիմիր Վլադիմիրովիչ (ծ. 1947), ռուս հոկեյիստ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1969): Ձմեռ. օլիմպ. խաղերի (1972, 1976) չեմպիոն, աշխարհի, Եվրոպայի և ԽՍՀՄ բազմակի չեմպիոն (1968–81):

ՊԵՏՐՈՎ, Ֆեոդոր Ֆեոդորովիչ (1902–1978), հրետան. համակարգերի ռուս. կոնստրուկտոր, գեն-լեյտ., ճարտարագետ (1966): Սոց. աշխ. հերոս (1944): Տանկ. ինքնագնաց և հեռահար հրետան. զենքերի գլխ. կոնստրուկտոր: ԽՍՀՄ Պետ. (1942, 1943, 1946-ին՝ կրկնակի), Լենինյան (1967) մրց-ներ:

ՊԵՏՐՈՎԻԽ Մարիա Սերգեևնա (1908–1979), ռուս բանաստեղծուհի, թարգմանչուհի: Հեղինակ է «Հեռավոր ծառ» (1968), «Ճակատագիր» (հրտ.՝ 1983), «Հորիզոնի գիծը» (հրտ.՝ 1986) ժող-ների: Թարգմանել է Հ. Հովհաննիսյանի, Ա. Իսահակյանի, Վ. Տերյանի, Հ. Սահյանի, Ս. Կապուտիկյանի և ուր. գործերից, խմբագրել հայ բանաստեղծների ռուս. ժող-ներ: Պ. բանաստեղծություններ է նվիրել Հայաստանին («Աշխարհում միայն մեկ Հայաստան», «Եվ գաղտնիքները Սևանա կղզու» ևն): Պ-ի բանաստեղծություններից թարգմանվել և հրատարակվել են հայ.:

ՀԳՄ Ե. Չարենցի անվ. մրց. (1979):

ՊԵՏՐՈՎԻՉ (Petrowicz) Գրիգոր (1916–մ. թ. անհտ), իտալահայ պատմաբան: Հռոմի Արևելագիտ-յան ինստ-ի պրոֆ. (1972): Հեղինակ է Լեհաստանի և Ուկրաինայի հայկ. գաղթավայրերի, հայոց եկեղեցու պատմությանը վերաբերող աշխ-ների:

ՊԵՏՐՈՎՄԿԻ Արթուր Վլադիմիրովիչ (1924–2006), ռուս. հոգեբան: ՌԿԱ ակադ. (1992, նախագահ՝ 1992–97-ին): Աշխ-ները վերաբերում են հոգեբ-յան պատմությանը, սոցիալ. և անձի հոգեբ-յանը:

ՊԵՏՐՈՎՄԿԻ Բորիս Վասիլևիչ (1908–2004), ռուս. վիրաբույժ: ՌԲԳԱ (1957), ՌԳԱ (1966) ակադ.: Սոց. աշխ. հերոս (1968): Առաջինն է ԽՍՀՄ-ում կիրառել սրտի փականների պրոթեզներ, մշակել և ներդրել երիկամների փոխպատվաստման մեթոդներ, բրոնխների և շնչափողի պլաստիկներ: Աշխ-ները վերաբերում են կերակրափողի քաղցկեղի վիրաբուժ. բուժմանը: Եղել է ԽՍՀՄ առողջապ-յան նախարար (1965–80): Լենինյան (1960), ԽՍՀՄ Պետ. (1971) մրց-ներ:

ՊԵՏՐՈՎՄԿԻ Գուրի Տիմոֆեևիչ (1931–2005), ռուս. ֆիզքիմիկոս: ՌԳԱ ակադ. (1997): Աշխ-ները վերաբերում են լազերների տեխնոլոգիային, թելքային օպտիկային, լուսաօպտիկային: ԽՍՀՄ Պետ. (1970, 1981), ՌԴ (1998) մրց-ներ:

ՊԵՏՐՈՎՄԿԻ Իվան Գեորգիևիչ (1901–1973), ռուս. մաթեմատիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1946): Սոց. աշխ. հերոս (1969): ՄՊՀ ռեկտոր (1951-ից): Աշխ-ները վերաբերում են դիֆերենցիալ հավասարումների տեսությանը, հանրահաշվ. երկրչփ-յանը, հավանականությունների տեսությանը, մաթ. ֆիզիկային: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1952):

ՊԵՏՐՈՎ–ՎՈԴԿԻՆ Կուզմա Սերգեևիչ (1878–1939), ռուս գեղանկարիչ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1930): Հեղինակ է վառ գույների հակադրումով կուռ կառուցվածքով կոմպոզիցիաների («Խաղացող տղաները», 1911, ևն), դրամատիկ. թեմատիկ պատկերների («1918 թվականը Պետրոգրադում», 1920), դիմանկարների («Ա. Ա. Ախմատովա», 1922), նատյուրմորտների («Թխենին բաժակում», 1932), նաև գրաֆիկ. գործերի և թատեր. ձևավորումների: Գործերից 7-ը ՀԱՊ-ում են:

ՊԵՏՐՈՒՇԵՎՄԿԱՅԱ Լյուդմիլա Ստեպանովնա (ծ. 1938), ռուս գրող: Հեղինակ է «Չինզանո», «Սմիռնովայի ծննդյան օրը» (երկուսն էլ բեմ.՝ 1977), «Երաժշտության դասերը» (բեմ.՝ 1979) պիեսների, «Իր շրջանը» (1988), «Արևելյան սլավոնների երգերը» (1990), «Էրոս աստծու ճանապարհով» (1993), «Տան գաղտնիքը» (1995), «Սև թիթեռ» (2008), «Պատմություններ իմ կյանքից» (2009) վիպակների ու պատմվածքների, «Համար մեկ կամ Այլ հնարավորությունների պարտեզներում» (2004) վեպի: Հայ. հրատարակվել է «Սեր. երջանկություն. ռեքվիեմ» (2016) պատմվածքների ժող-ը: ՌԴ Պետ. մրց. (2002):

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, որոշակի կառավարման ձևով (միապետություն, հանրապետություն) հաս-յան քաղ. կազմ-յուն: Ըստ պետ. կառուցվածքի ձևի՝ Պ-ները լինում են ունիտար (միասնական) և դաշն.:

«ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ», գիտագործն. եռամսյա հանդես (1998–ից, Երևան՝ հայ., ռուս., անգլ.): ՀՀ իրավաբանների միության հրտ-յուն: Գլխ. խմբ.՝ Լևոն Օհանյան:

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՉԱԿԱԳԻՐ 1942 (26 պետությունների հռչակագիր 1942), հունվ. 1-ին Վաշինգտոնում ստորագրել են Հակահիտլեր. կոալիցիայի մասնակից պետությունների ներկայացուցիչները: Հռչակագրով պարտավորեցվել է իրենց բոլոր ռազմ. և տնտ. պաշարներն օգտագործել ֆաշիստ. ռազմաքաղ. խմբավորման դեմ պատերազմում, թշնամու հետ չկնքել անջատ հաշտություն կամ զինադադար:

ՊԵՐ ԼԱՇԵԶ (Pere-Lachaise), գերեզմանատուն Փարիզում (Լյուդովիկոս XIV-ի խոստովանահայր Լա Շեզի նախկին կալվածքը, այստեղից՝ անվանումը), որտեղ թաղված են գիտ-յան, մշակույթի, ռազմ., քաղ. և այլ ականավոր գործիչներ: 1871-ին Պ. Լ-ի մոտ տեղի են ունեցել Փարիզի կոմունարների վերջին մարտերը վերսալցիների դեմ, մայիսի 27-ին գերեզմանատան հս-արլ. պատի մոտ գնդակահարվել են գերի ընկած կոմունարները, որոնց հիշատակին 1899-ին կանգնեցվել է հուշարձան («Կոմունարների պատը»): Պ. Լ-ում թաղված է եղել նաև զորավար *Անդրանիկը*, 2000-ին նրա աճյունը տեղափոխել են ՀՀ:

ՊԵՐԱԿ (Perak), նահանգ Մալայզիայում: Տարածքը՝ 21,05 հզ. *կմ*^{2}, բն.՝ 2,4 մլն (2010): Բաժանված է 10 վարչ. շրջանների: Սահմանադր. միապետություն–սուլթանություն է: Վարչ. կենտրոնը՝ Իպոհ:

ՊԵՐԳԱՄԻՆ, 1. մեկուսիչ և ծածկամիջադրման փաթթոցային նյութ. ստացվում է ստվարաթուղթը նավթ. բիտումներով տոգորելով: 2. Կիսաթափանցիկ սոսնձված թուղթ՝ սպիտակ թաղանթանյութից, առանց հավելանյութերի, որից պատրաստում են մոմա- և սննդանյութերի փաթեթավորման թուղթ:

ՊԵՐԳԱՄՈՆ, **Պերգամոնի թագավորություն**, հելլենիստ. պետություն Փոքր Ասիայի արմ-ում մ. թ. ա. 283–133-ին: Մայրաքաղաքը՝ Պերգամոն (այժմ՝ Բերգամա, Թուրքիա): Հզորության գագաթնակետին է հասել մ. թ. ա. III դ-ի 2-րդ կեսին և II դ-ի սկզբին: Ռազմ. և դիվանագիտ. հարաբերություններ է ունեցել *Փոքր Հայքի* թագավորության հետ: Մ. թ. ա. 133-ին Պ-ի թագավոր Ատտալոս III-ը Պ. «կտակել» է Հռոմին, որը Պ-ի տարածքում ստեղծել է (129-ից հետո) «Ասիա» պրովինցիան: Բերգամայում հայեր բնակվել են մինչև XX դ-ի սկիզբը:

ՊԵՐԳԱՄՈՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ, անտիկ աշխարհի խոշորագույն գրադարաններից, 2-րդը՝ *Ալեքսանդրիայի գրադարանից* հետո: Հիմնադրել է Եվմենես II-ը մ. թ. ա. II դ-ում: Ըստ Պլուտարքոսի՝ Պ. գ-ում պահվել է շուրջ 200 հզ. գիրք: Լուծարել է *Մարկոս Անտոնիոսը* մ. թ. ա. I դ-ում, գրքերը հանձնել է Ալեքսանդրիայի գրադարանին՝ որպես հարսանեկան ընծա *Կլեոպատրային*:

ՊԵՐԳՈԼԵԶԻ (Pergolesi, Pergolese) Ջովաննի Բատիստա (1710–1736), իտալացի կոմպոզիտոր: Բուֆֆ-օպերայի հիմնադիրը («Սպասուհին՝ տիրուհի», 1733): Հեղինակ է նաև սերիա-օպերաների, օրատորիաների, կանտատների («Ստաբատ մատեր», 1735, ևն), մեսսաների, կամեր-վոկալ., գործիք. և այլ երկերի:

ՊԵՐԵԳԵՐԻ Գրիգորի Պետրովիչ (1871–1953), կամրջաշինության ոլորտի ռուս. գիտնական: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1943): Մի շարք կամուրջների և ուղեկամուրջների (վիադուկ) նախագծերի հեղինակ, Նևա գետի վրա Վոլոդարսկու անվ. կամրջի կառուցման և լեյտ. Շմիդտի անվ. կամրջի վերակառուցման ղեկ.: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943):

ՊԵՐԵԼՄԱՆ (Perelman) Գրիգորի Յակովլևիչ (ծ. 1966), իրեա մաթեմատիկոս: 2002-ին ապացուցել է մաթ-ի հիմնարար խնդիրներից մեկի՝ այսպես կոչված Պուանկարեի (ձևակերպել է 1904-ին) վարկածը: 1993-ից՝ Իսրայելում: Ջ. Ֆիլդսի մրց. և ոսկե մեդալ (2006), Քլեյի մաթ. ինստ-ի հզ-ամյակի մրց. (2010, հրաժարվել է):

ՊԵՐԵԿՈՊԻ ՊԱՐԱՆՈՅ, Ղրիմի թ-կղզին միացնում է մայրցամաքին: Երկ.՝ 30 *կմ*, լայն.՝ 8–23 *կմ*: Քաղաքաց. պատերազմի (1917–22) և ՀՄՊ-ի տարիներին Պ. պ-ում ընթացել են կատաղի մարտեր:

ՊԵՐԵՅԱՍԼԱՎՅԱՆ ՌԱԴԱ 1654, ուկր. ժողդ-ի ներկայացուցիչների հունվ. 8(18)-ի ժողովը, որը որոշում է ընդունել Ռուսաստանի հետ *Զահասինյա Ուկրահնայի* վերամիավորման մասին: Գումարել է հետման Բ. *Խմելնիցկին* Պերեյասլավլ (այժմ՝ Պերեյասլավ-Խմելնիցկի) ք-ում:

ՊԵՐԵՅՐԱ (Pereira), ք. Կոլումբիայի արմ-ում, Ռիսարալդա դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 472 հզ. (2016): Տրանսպորտ. հանգույց է:

ՊԵՐԵՍ ԳԱԼԴՈՍ (Pérez Galdós) Բենիտո (1843–1920), իսպանացի գրող: Հեղինակ է «Ազգային դրվագներ» (հ. 1–46, 1873–1912) էպոպեայի, այդ թվում՝ «Սարագոսա», «Խուան Մարտին Էլ Էմպեսինադո» (երկուսն էլ՝ 1874), «Դոնյա Պերֆեկտա» (1876) վեպերի, «Ժամանակակից իսպանական վեպեր» (հ. 1–25, 1881–1915) վիպաշարի, որտեղ ներկայացրել է XIX–XX դդ-ի իսպ. իրականությունը:

ՊԵՐԵՍ ԴԵ ԿՈՒԵԼՅԱՐ (Pérez de Cuellar) Խավիեր (ծ. 1920), պերուացի դիվանագետ: 1982–91-ին՝ ՄԱԿ-ի գլխ. քարտուղար: 1979–81-ին՝ ՄԱԿ-ի գլխ. քարտուղարի տեղակալ: Ջ. Ներուի անվ. մրց.:

ՊԵՐԵՍՏԻԱՆԻ (Perestiani) Իվան Նիկոլայի (1870–1959), վրաց. կինոռեժ., դերասան (ծագումով՝ իտալացի): ՎԽՍՀ ժող. արտիստ (1949): Վրաց. կինոմատոգրաֆիայի հիմնադիրներից: Նկարահանվել է «Արսենն», «Գեորգի Սաակաձե», «Դավիթ Բեկ» (Հայկինո) և այլ ֆիլմերում, նկարահանել «Արսենն Ջորջիաշվիլի» (1921), «Կարմիր սատանի ճտերը» (1923), «Երեք կյանք» (1925), «Անուշ» (1930, ըստ Հ. Թումանյանի, սցենարը՝ Պ-ի), «Լույս և ստվերներ» (1933, վերջին երկուսը՝ Հայկինո) գեղ., նաև վավերագր. և այլ կինոնկարներ:

ՊԵՐԵՎՈՇՉԻԿՈՎ Դմիտրի Սատվեևիչ (1788–1880), ռուս. աստղագետ, մաթեմատիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1855): Մոսկվայի համալսարանի աստղադիտարանի հիմնադիր-տնօրենը (1831–51): Աստղագիտ-յան ռուս. 1-ին դասընթացների հեղինակն է:

ՊԵՐԹ (Perth), ք. Ավստրալիայի հվ-արմ-ում, Արմ. Ավստրալիա նահանգ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,3 մլն (2010): Նվիհգատ՝ Հնդ. օվկ-ի ափին (տարեկան բեռնաշրջանառությունը՝ 280 մլն *տ*): Ունի օդանավակայան: Հիմնադրվել է 1829-ին:

ՊԵՐԻ (Péri) Գաբրիել (1902–1941), Ֆրանսիայում Դիմադրության շարժման և կոմ. երիտասարդ. շարժման կազմակերպիչներից: 1924-ից՝ «*Յումանիտե*»-ի խմբ.: Գնդակահարել են գեստապոյականները:

ՊԵՐԻ (Peri) Յակոպո (1561–1633), իտալացի կոմպոզիտոր, երգիչ: Օպերայի, նաև գործիք. նվագակցությամբ մոնոդիայի հիմնադիրներից: Համահեղինակ է առաջին օպերայի («Դափնե», 1598) երաժշտության, հեղինակ՝ «Եվրիդիկե» (1600, Օրփեոսի դերակատար) և այլ օպերաների, նաև կամեր-վոկալ. երկերի, հոգևոր երաժշտության:

ՊԵՐԻ... (հուն.՝ peri – շուրջ, մոտ, կողքին), բարդ բառերի մաս. նշանակում է մոտ, շուրջը (օր.՝ *պերիհարթրիտ, պերիդուրալ*):

ՊԵՐԻԱՐԹՐԻՏ (< *պերի...* և հուն.՝ arthron – հոդ), խոշոր հոդերի շուրջհոդային հյուսվածքների (հոդապատյան, կապաններ, ջլեր ևն) բորբոքումը վնասվածքների, գերբեռնվածության, սառեցման դեպքերում:

ՊԵՐԻԱՐՏԵՐԻՏ (< *պերի...* և հուն.՝ arteria – զարկերակ), զարկերակի բորբոք. ախտահարում, ընդգրկում է նրա արտաքին շերտը: Հանգուցավոր Պ. *կոլագենոզների* խմբի հիվանդություն է:

ՊԵՐԻԴԵՐՄ (< *պերի...* և հուն.՝ derma – մաշկ), բույսերի (հիմնականում՝ բազմամյա) ցողունների, արմատների, պալարների, կոճղարմատների 2-րդային ծածկող հյուսվածք:

ՊԵՐԻԴՈՏԻՏ, խորք. ուլտրահիմք. ապար. կազմված է հիմնականում օլիվինից (40–90 %) և պիրոքսեններից, հազվադեպ՝ եղջրախաբից (հոռնբլենդ) կամ փայլարից: Պ-ի հետ կապված են քրոմիտի, տիտանամագնիտների, պլատինի, նիկելի և այլ հանքավայրեր:

ՊԵՐԻԿԱՐԴ (< *պերի...* և հուն.՝ kardia – սիրտ), տես *Սրտապարկ*:

ՊԵՐԻԿԱՐՊԻՈՒՄ (< *պերի...* և հուն.՝ karpos – պտուղ), տես *Պտղապատյան*:

ՊԵՐԻԿԼԵՍ (Pericles, մ. թ. ա. մոտ 490–429), Հին Հունաստանի պետ., քաղ. և ռազմ. գործիչ: 444/443–429-ին (բացի 430-ից) ընտրվել է առաջին (10-ից) *ստրատեգոս*,

դարձել Աթեն. պետության ղեկ.: Պ.-ի օրենսդր. միջոցառումները նպաստել են Աթեն. ժողովրդաիշխանության ծաղկմանը: Ծավալել է շին. գործունեություն (Պարթենոն, Պրոպիլեա, Օդեոն և ն.): ***Պելոպոնեսյան պատերազմի*** (մ. թ. ա. 431–404) ժամանակ ղեկավարել է մի շարք ռազմ. խմբավորումներ:

ՊԵՐԻՆԱՏԱԼ ՇՐՋԱՆ (< ***պերի***... և լատ.՝ natalis – ծննդյանը վերաբերող), **շուրջծննդյան շրջան**, ընդգրկում է պտղի զարգացումը հղիության 28 շաբաթից սկսած, ծննդաբերության շրջանը և երեխայի կյանքի առաջին 7 օրը:

ՊԵՐԻՆԱՏԱԼՈԳԻԱՅԻ, ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ, ՀՀ ԱՆ մասնագիտացված բուժկանխարգելիչ հիմնարկ: Հիմնադրվել է 1993-ին (հիմնադիր-տնօրենն՝ Ռազմիկ ***Աբրահամյան***): Հիմն. խնդիրներն են՝ պերինատոլոգիայի համակարգումն ու կատարելագործումը, հատկապես՝ անտենատալ և պերինատալ շրջաններում պտղի պաշտպ-յան ապահովումը, մանկ. մահացության նվազեցումը, կանանց վերարտադրող. առողջության կարգավորումը: Զբաղվում են նաև ընտանիքի պլանավորման, գինեկոլոգ. ընդերադիտման, արհեստ. սերմնավորման, սառնապահածոյացման և փորձանոթ. բեղմնավորման հարցերով: Ներդրվել են դոպլերոմետրիան, կաթնագեղձագրությունը, հեշտոցադիտումը ևն:

ՊԵՐԻՈԴԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, տես ***Պարբերական հիվանդություն***:

ՊԵՐԻՊԱՏԵՏԻԿՅԱՆ ԴՊՐՈՑ (հուն.՝ peripatos – ճեմել), կամ Լիկեյ (Աթենքի ծայրամասի գիմնազիայի անունից), ***Արիստոտելի*** հիմնադրած փիլ. դպրոցը: Պ. դ.-ի ներկայացուցիչներն ուսումնասիրել են նաև բնական գիտ-յունները (Արիստոտբսենը երաժշտության տեսաբան էր, Դիկեարքոսը՝ պետության պատմաբան և տեսաբան, Ստրատոն Լամպսակացին՝ ֆիզիկոս, Արիստարքոս Սամոսացին՝ աշխարհագետ և աստղագետ, ևն):

Պ. դ.-ի ազդեցությունը միջնորդավորված կրել է ***Դավիթ Անհաղթի***: Պերիպատետիզմի նշանավոր հուշարձան է միայն հայ-ով պահպանված «Անանուն մեկնութիւն ստորոգութեանցն Արիստոտէլի» աշխ-ը:

ՊԵՐԻՊՏԵՐ (հին.հուն.՝ peripteros – սյունապատ), տաճարի տեսակ արխայիկ (Դեմետրայի տաճարը) և դաս. (Պարթենոն) դարաշրջաններում. ուղղանկյուն հատակագծով սյունաշարով շրջափակված կառույց է: Պ. է նաև Գառնիի տաճարը (I դ.):

ՊԵՐԻՍՊԵՐՄ (< ***պերի***... և հուն.՝ sperma – սերմ), բույսերի սերմերի պաշարապահ հյուսվածք, որտեղ կուտակվում են սաղմի զարգացմանն անհրաժեշտ սննդանյութերը: Նուցելուսի հյուսվածքի մնացորդ է: Բնորոշ է մեխակազգիների, կոճապղպեղազգիների, հարսնամատազգիների ընտանիքների բույսերին:

ՊԵՐԻՏՈՆԻՏ, տես ***Որովայնամգի բորբոքում***:

ՊԵՐԻՑԻԿԼ, **պերիկամբիում** (< ***պերի***... և հուն.՝ kyklos – շուրջ), բույսերի երիտասարդ արմատներ և ցողուններ առաջացնող հյուսվածք՝ տեղադրված կենտր. գլանի շուրջը:

ՊԵՐԻՕԴՈՆՏԻՏ (< ***պերի***... և հուն.՝ odus, սեռ. հոլ.՝ odonthos – ատամ), **պերիցեմենտիտ**, ատամի արմատ. թաղանթի (շրջոսկոր) և նրա հարակից հյուսվածքների բորբոքում: Առաջանում է որպես կակղենու բորբոքման (պուլպիտ), նաև քիմ. (մկնդեղ, ֆորմալին) կամ մեխ. վնասվածքների բարդություն: Ախտանշանները՝ ցավեր՝ ատամի վրա ճնշում գործադրելիս (հետագայում՝ մշտ.), լնդերի կարմրություն և ցավոտություն, ատամների շարժունություն ևն:

ՊԵՐԻՕՍՏԻՏ, տես ***Շրջոսկրի բորբոքում***:

ՊԵՐԼՅԱՆ (Պերեճիքլյան) Ալեքսան (ծ. 1946), արվեստաբան, գեղանկարիչ: 1976-ից՝ Փարիզում: Հեղինակ է եվրոպ. արդի, սփյուռքահայ և Հայաստանի նկարիչներին նվիրված մի շարք հոդվածների, նաև «Գորկու հայկականությունը» ուսումնասիրության (1977), գեղանկարչ. գործերի:

ՊԵՐԿԵՍ (Perca), ***պերկեսակերպների*** կարգի ձուկ: Երկ.՝ մինչև 50 ***սմ***, կ. զ.՝ մինչև 2 ***կգ***: Ապրում է Եվրասիայի քաղցրահամ ջրերում (բացառությամբ Իտալիայի, Պիրենեյան թ-կղզու), Սկանդինավիայի հս. մասում և այլուր: Արդյունագործ. ձուկ է:

ՊԵՐԿԵՍԱԿԵՐՊՆԵՐ (Perciformes), ոսկրային ձկների կարգ: Երկ.՝ 1 ***սմ***–5 ***մ***: Հայտնի է մոտ 150 ընտանիք, մոտ 6500 տեսակ (ողնաշարավորների ամենաբազմաքանակ կարգն է): Ապրում են ծովերում և քաղցրահամ ջրերում: Պ.-ից են նոտոտենիաները, շիղաձկները, թյունիկները, երկարատամիկները ևն: Բազմաթիվ Պ. արդյունագործ. ձկներ են:

ՊԵՐԿԻՆ (Perkin), անգլիացի օրգանիկ-քիմիկոսներ, հայր և որդի. 1. **Ուիլյամ Հենրի Պ.** (ավագ, 1838–1907): Ստացել է առաջին սինթետիկ օրգ. ներկանյութը՝ մովեինը (1856), և կազմակերպել է նրա արտադրությունը: Մշակել է չհագեցած արոմատիկ կարբոնաթթուների ստացման եղանակ (1868, Պ.-ի ռեակցիա): 2. **Ուիլյամ Հենրի Պ.** (կրտսեր, 1860–1929): Աշխ-ները վերաբերում են ալիցիկլիկ միացությունների սինթեզին ու կառուցվածքին:

ՊԵՐՀԻԴՐՈԼ, ջրածնի ***գերօքսիդի*** անվանումներից:

ՊԵՐՀԻԴՐՕՔՍԻԼ, **գերհիդրօքսիլ**, HO_2, ջրածնի վերգերօքսիդային անկայուն մասնիկ: Հայտնի են նրա աղերը՝ վերգերօքսիդները (KO_2, PbO_2, BaO_4 ևն): Պ. առաջանում է այրման, թթվածնով և ջրածնի գերօքսիդով օքսիդացման ժամանակ:

ՊԵՐՄ, ք. (1780-ից, 1940–57-ին՝ Մոլոտով), ՌԴ համանուն երկրամասի վարչ. կենտրոնը, նվինգստ՝ Կամա գետի ափին, երկթղ. հանգույց է: Բն.՝ 985,8 հզ. (2009): Պ.-ում վերամշակում են նավթ և բնական գազ: Գործում են ՌԳԱ գիտ. կենտրոնը, 7 բուհ (այդ թվում՝ համալսարան), ՕՔԹ, պատկերասրահ ևն: Հիմնադրվել է 1723-ին:

ՊԵՐՄԱԼՈՅ [անգլ.՝ permalloy, < perme (ability – թափանցելիություն և alloy – համաձուլվածք)], երկաթի հետ նիկելի մագնիսափափուկ համաձուլվածքները, որոնք բնութագրվում են մեծ մագնիս. թափանցելիությամբ, փոքր կոէրցիտիվ ուժով և հիստերեզիսի փոքր կորուստներով: Տարբերում են ցածրնիկելային (40–50 %, օր.՝ պերմենորմ, պերմենդյուր) և բարձրնիկելային (70–83 %) Պ.-ներ: Մշակվել է ԱՄՆ-ում, արդ-յան մեջ կիրառվել է 1920-ից:

ՊԵՐՄԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, ուգրա-ֆինն. լեզվաընտանիքի ճյուղ: Ներառում է ուդմուրտերենը, կոմի-զիրյաներենը, կոմի-պերմերենը:

ՊԵՐՄԻ ԵՐԿՐԱՄԱՍ, վտմ ՌԴ Մերձվոլգյան դաշն. օկրուգում: Տարածքը՝ 160,2 հզ. ***կմ***^{2}, բն.՝ 2708,4 հզ. (2009): Ունի 33 շրջան, 25 քաղաք, 36 քտա: Վարչ. կենտրոնը՝ ***Պերմ***: Կազմավորվել է 2005-ին՝ Պերմի մարզի և Կոմի Պերմյակյան ԻՄ-ի միավորմամբ: Տնտ-յան առաջատար ճյուղը վերամշակող արդ-յունն է (նավթի և գազի վերամշակում), կան քիմ., մեքենաշին. և այլ ձեռն-ներ:

ՊԵՐՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ, **Պերմ**, Երկրի պատմության ***պալեոզոյան դարաշրջանի*** վերջին՝ 6-րդ ժամանակաշրջանը. հաջորդում է կարբոնին, նախորդում՝ տրիասին (մեզոզոյ): Տևողությունը՝ շուրջ 44 մլն տարի: Պ. ժ. անվանումը տվել է անգլիացի երկրաբան Ռ. Մուրչիսոնը 1841-ին: Նախկինում Պ. ժ. ստորաբաժանել են ստորին (P_1) և վերին (P_2), XXI դ.-ում՝ ստորին (P_1), միջին (P_2) և վերին (P_3) մասերի: Պ. ժ.-ում ավարտվել են հերցինյան լ-կազմ. շարժումները, աշխուժացել է հրաբխականությունը, տեղի է ունեցել Երկրի պատմության ամենախոշոր ռեգրեսիաներից մեկը, որի հետևանքով փոքրացել են ծովերի մակերևույթները, և փոխվել կլիման: Ի հայտ է եկել ասեղնատերև բուսականությունը: Ժամանակաշրջանի ավարտին վերացել են տիպիկ պալեոզոյան խմբերը: Մայրցամաք. զանգվածները միավորվել են՝ ստեղծելով Պանգեյ գերցամաքը:

ՊԵՐՆԻՅԻՈԶ ԱՆԵՄԻԱ, (լատ.՝ perniciosus – մահացու, վտանգավոր), պայմանավորված է օրգանիզմում B_{12} վիտամինի անբավարարության հետևանքով առաջացած արյունաստեղծման խանգարմամբ: Ախտանշանները՝ վառ կարմիր, ապա՝ «լաքապատ» լեզու, ստամոքս. ախիլիա (ստամոքսահյութում պեպսինի և աղաթթվի բացակայություն), սակավարյունություն՝ ախտաբան. էրիթրոցիտների առկայությամբ, և նյարդ. համակարգի ախտահարում:

ՊԵՐՇԻՆԳ (Pershing) Ջոն Ջոզեֆ (1860–1948), ամերիկացի զորապետ, բանակի գեն. (1919): Մեքսիկայում ինտերվենցիայի ժամանակ (1916–17) գլխավորել է բանակներ, 1917-ից՝ Եվրոպայում ամերիկ. էքսպեդիցիոն ուժերը: 1921–24-ին՝ ԱՄՆ-ի բանակի շտաբի պետ:

ՊԵՐՈԶ, **Փերոզ** (ծ. թ. անհտ–484), Պարսից արքա՝ 459-ից: Սասանյանների հարստությունից: ***Հազկերտ II***-ի կրտսեր որդին: Պ.-ի քաղ-յունը Հայաստանում և Այսրկովկասում առաջացրել է հուժկու ապստամբություն [տես ***Վահան Սյունիկոնյան***, ***Վահանանց պատերազմ 481–484***, ***Վախթանգ I Գորգասալ*** (Գորգասար)]: Զոհվել է հեփթաղների դեմ 2-րդ արշավանքի ժամանակ:

ՊԵՐՈՎ Վասիլի Գրիգորևիչ (1833/34–1882), ռուս. գեղանկարիչ: Գեղ. շրջիկ ցուցահանդեսների ընկ-յան հիմնադիրներից: Հեղինակ է ժանր. նկարների («Գյուղական խաչաթափորը Զատկին», 1861), «Ընջեցյալի հուղարկավորությունը», 1865, «Եռաձի կառք», 1866), հոգեր. դիմանկարների («Ա. Ն. Օստրովսկի», 1871, «Ֆ. Մ. Դոստոևսկի», 1872):

ՊԵՐՈՎՍԿԻՏ (ռուս. կոմս Լ. Ա. Պերովսկու անունով), միներալ, բարդ օքսիդ՝ $CaTiO_3$: Ce և այլ հազվագյուտ հող. տարրերի (կնոպիտում՝ մինչև 8 %)՝ Nb, Fe, Na խառնուրդով: Սև է, մոխրագույն, գորշ: Կարծր.՝ 5,5, խտ.՝ 4–4,3 ***գ/սմ***^{3}: Ti, Nb, Tr-ի ստացման պոտենցիալ աղբյուր է:

ՊԵՐՊԵՐՅԱՆ Արտավազդ Շահանի (1923–2002), գեղանկարիչ: Շահան *Պերպերյանի* որդին: Գործերից են «Հանգստացող բանվորը», «Երեխան խրճիթում», «Ածխահատը» ևն, Մեսրոպ Մաշտոցի, Մխիթար Հերացու, Մխիթար Գոշի դիմանկարները ևն: Ստեղծել է որմնանկարներ Լիոնի, Բեյրութի և Երուսաղեմի եկեղեցիներում (1960–70-ական թթ.):

ՊԵՐՊԵՐՅԱՆ (Բերբերյան) Համբարձում Պաղտասարի (1905–1999), կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ: Հեղինակ է օպերաների, օպերա-կանտատների («Արեգնազան», «Մեր ուխտը»), «Թիթեռ» մանկ. օպերա-բալետի, օրատորիաների («Խորհուրդ Վարդանանց», «Աղոթք վաղվա օրվա սեմին» ևն), Կոմիտասի հիշատակին նվիրված «Ռեքվիեմ»-ի, խմբերգերի, երգերի («Կանձրևե, տղաս» ևն), ջութակի, թավջութակի կոնցերտների և այլ գործերի:

ՀԿՄ Կոմիտասի անվ. մրց. (1981):

ՊԵՐՊԵՐՅԱՆ Հայկ Նշանի (1887–1978), հայագետ, բանասեր, խմբ.: 1963–77-ին՝ *«Ռևյու դեզ Էթյուդ արմենիեն»* հայագիտ. հանդեսի պատ. քարտուղար: Հեղինակ է «Հայկականք» («ՀԱ», 1958–68) հոդվածաշարի, «Օսմանեան քանի մը վաւերագիր Իսթանպուլի հայոց եկեղեցիներէն ոմանց մասին» (1961), «Նիւթեր Կ. Պոլսոյ հայոց պատմութեան համար» (1965), «Նիկեփոր Փոկասի ապստամբութիւնը եւ Դաւիթ Արծրունի» («ՀԱ», 1967), «Հայոց կաթողիկոսական աթոռին բարձումը XI դարուն երկրորդ կէսին» («ՀԱ», 1967) աշխ-ների: Ֆրանս. է թարգմանել Արիստակես Լաստիվերցու երկը (Մ. Կանարի հետ, 1973):

ՊԵՐՊԵՐՅԱՆ Շահան Ռեթեոսի (1891–1956), մանկավարժ, երաժշտագետ, հոգեբան, փիլ.: Ռեթեոս *Պերպերյանի* որդին, Օննիկ *Պերպերյանի* եղբայրը: Հայ մշակութ. միության (1940–47, Հակոբ *Օշականի* հետ) հիմնադիրը: 1911–22-ին՝ *Պերպերյան վարժարանի* տնօրեն: Եղել է Կ. Պոլսի Հայ արվ-ի տան հիմնադիրներից (նաև նախագահ), «Բարձրավանք» գրգեղ. հանդեսի պատ. տնօրեն: Հեղինակ է «Կոմիտաս վարդապետ. անձը եւ գործը» (1936), «Երկու ժամանակներ» (1943), «Գեղագիտութիւն եւ գեղարուեստ» (հրտ.՝1975), «Բնազանցութիւն» (հրտ.՝ 1978), «Իմաստասիրական ժողովածու» (հրտ.՝1992), «Հոգեբանութիւն» (հրտ.՝ 1992), «Թելադրանք հոգևորականներու (1938–1944)» (հրտ.՝ 2002) և այլ աշխ-ների:

ՊԵՐՊԵՐՅԱՆ Ռեթեոս Հակոբի (1848–1907), բանաստեղծ, մանկավարժ, հրապարակախոս, տնտեսագետ: Շահան և Օննիկ *Պերպերյանների* հայրը: 1876-ին Կ. Պոլսում հիմնադրել է *Պերպերյան վարժարանը*: Հեղինակ է «Առաջին տերևք» (1877), «Խոհք եւ յուշք» (1904) բանաստեղծությունների ժող-ների, «Երկու բանախօսութիւնք» (1880), «Համառօտ քաղաքական տնտեսութիւն...» (1883), «Դրամ» (1886), «Առաջին գիրք գաղղիերէնէ ի հայ թարգմանութեան...» (1885), «Դպրոց եւ դպրութիւն» (1907) և այլ աշխ-ների:

ՊԵՐՊԵՐՅԱՆ Օննիկ Ռեթեոսի (1888–1959), կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ: Ռեթեոս *Պերպերյանի* որդին, Շահան *Պերպերյանի* եղբայրը: 1922-ից՝ Կահիրեում, 1938-ից՝ Փարիզում: Հեղինակ է բալետների, սիմֆ. երկերի («Հայրենիք»՝ սիմֆոնիա, «Հայկական սիմֆոնիա», «Նարեկ», «Հայկական պատարագ»), նաև գործիք. կոնցերտների ու պիեսների, մեներգերի, խմբերգերի: Փոխադրել է Կոմիտասի խմբերգերը՝ լար. նվագախմբի համար: Երկացանկում՝ հայ կոմպոզիտորների (Կոմիտաս, Ա. Տիգրանյան, Ա. Սաթյան և ուր.), նաև սեփ. երկերից:

ՊԵՐՊԵՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ, հիմնադրվել է 1876-ին Կ. Պոլսում՝ Ռեթեոս *Պերպերյանի* ջանքերով՝ երկրորդ. դպրոցի ծրագրով: 1914–18-ին փակվել է, վերաբացվել է նախակրթարանի և լիցեյի բաժիններով: 1924-ին տեղափոխվել է Կահիրե, գործել նույն ծրագրով: Փակվել է 1934-ին նյութ. սղության պատճառով:

ՊԵՐՊԻՆՅԱՆ (Perpignan), ք. Ֆրանսիայի հվ-ում՝ Թետ գետի ափին: Արլ. Պիրենեյի դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 112 հզ. (2010): Գղտ-յան շրջանների առևտրի կենտրոն է: Հայտնի է X դ-ից: Մերձակայքում կա երկաթի հանքավայր:

ՊԵՐՍԵՊՈԼԻՍ (հուն.՝ Persepolis, հին պարսկ.՝ Պարսա, պարսկ.՝ Թախտ-ի-Ջեմշիդ), *Աբեմենյանների* մայրաքաղաքներից (Շիրազից 50 *կմ* հս-արլ.): Հիմնադրվել է մ. թ. ա. VI դ-ի վերջին: Մ. թ. ա. 330-ին Ալեքսանդր Մակեդոնացին ավերել է: Պ-ի պալատի հիմն. մասերն էին՝ ընդունելությունների 2 շքեղ դահլիճները (Մեծ ապադանա) և Հարյուր սյուների դահլիճը: Քաղաքի շրջակայքում պահպանվել են դամբարաններ, բարձրաքանդակներ, կրակի տաճար, սրբարաններ և այլ հուշարձաններ:

ՊԵՐՍԵՊՏՐՈՆ (անգլ.՝ perseptron, լատ.՝ perseptio – ընկալում), ընկալման գործընթացը մոդելավորող սարք. առաջարկել է Ֆ. *Ռոզենբլատը* 1957-ին (տեսող. վերլուծիչ «Մարկ - 1»): Հետագայում Պ. անվանել են պատկերների ճանաչման հետ կապված խնդիրների լուծման (հաճախ՝ համակարգիչներով) համակարգերը:

ՊԵՐՍԵՎԵՐԱՑԻԱ (լատ.՝ perseveratio – համառություն), մարդու՝ որևէ հոգեկան նկարագրի, գործողությունների, արտահայտությունների կամ վիճակների ստերեոտիպ կրկնությունները: Նկատվում է ուժեղ հոգնածության դեպքում, կարող է լինել նաև ԿՆՀ-ի հիվանդության դրսևորում:

ՊԵՐՍԵՎՍ (լատ.՝ Perseus), հուն. դից-յան հերոս, *Զևսի* և *Դանայայի* որդին, սպանել է Մեդուզա Գորգոնային, ծովահրեշից փրկել Անդրոմեդային ևն:

ՊԵՐՍԵՎՍ, համաստեղություն Հս. կիսագնդում՝ Կասիոպեա, Անդրոմեդա, Եռանկյունի, Խոյ, Ցուլ, Կառավար և Ընձուղտ համաստեղությունների միջև: Հայտնի են Պ-ի χ և h կրկնակի ցրված աստղակույտերը. Պ-ի α աստղը կոչվում է Միրֆակ, β-ն՝ Ալգոլ:

ՊԵՐՍԵՓՈՆԵ (Persephone), **Կորա**, պտղաբերության, մեռյալ աշխարհի աստվածուհին հուն. դից-յան մեջ: *Զևսի* և *Դեմետրայի* դուստրը, *Հադեսի* կինը: Պ-ին համապատասխանում է հռոմ. *Պրոզերպինան*:

ՊԵՐՍԻ (Percy) Պիեռ Ֆրանսուա (1754–1825), ֆրանսիացի վիրաբույժ, ռազմադաշտ. վիրաբուժության հիմնադիրներից: Նապոլեոն I-ի բանակների ռազմաբժշկ. ծառայության կազմակերպիչը: Մշակել է վիրավորներին առաջին օգնության համակարգ, կազմավորել դաշտ. շարժ. վիրաբուժ. ջոկատներ:

ՊԵՐՍԻԵ (Percier) Շառլ (1764–1838), ֆրանսիացի ճարտ.: Ամպիր ոճի հիմնադիրներից: Փարիզի Կառուզել հրապարակում հինհուն. ճարտ-յան մոտիվներով կառուցել է կամար (1806, Պ. Ֆ. Լ. Ֆոնտենի հետ), ձևավորել ինտերիերներ ևն:

ՊԵՐՍԻՍՏԵՆՏ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐ (լատ.՝ persistens, սեռ. հոլ.՝ persistentis – համառ), օրգանիզմներ, որոնք էվոլյուցիայի ընթացքում պահպանվել են համեմատաբար անփոփոխ տեսքով, այսպես կոչված կենդանի բրածոներ են կամ ֆիլոգենետիկ. մնացորդներ (օր.՝ լատիմերիա վրձնալողակ ձուկը, նեոպիլինա փափկամարմինը):

ՊԵՐՍՈՆԱԼԻԶՄ (լատ.՝ persona – անձ), փիլ. ուղղություն, ըստ որի՝ անձն առաջնային ստեղծագործ. ռեալություն է, իսկ ողջ աշխարհը՝ «բարձրագույն անձի» Աստծու ստեղծագործ. ակտիվության դրսևորում: Պ. ձևավորվել է XX դ-ի սկզբին ԱՄՆ-ում (Բ. Բոուն, Ջ. Ռոյս և նրանց հետևորդները՝ Է. Բրայթմեն, Ռ. Ֆլյուելինգ) և Ռուսաստանում (Ն. Ա. Բերդյաև, Լ. Ի. Շեստով), 1930-ական թթ-ին զարգացել է Ֆրանսիայում (Է. Մունիե, Ժ. Լակրուա, Մ. Նեդոնսել, Պ. Ռիկյոր):

ՊԵՐՎԱՄԱՅՍԿԻ Լեոնիդ Սոլոմոնովիչ (Իլյա Շլյոմովիչ Գուրևիչ, 1908–1973), ուկրաինացի գրող: Հեղինակ է «Կոմսա» (1926), «Բծեր արևի վրա» (1928) պատմվածքների, «Տտիպ խնձորներ» (1929), «Հերոսական բալլադներ» (1932), «Կուսածաղկի աշխարհ» (1940), «Զինվորական երգեր» (1946) բանաստեղծությունների ժող-ների, «Վայրի մեղրը» (1963, հայ.՝ 1968) հոգեբ. վեպի, նաև պիեսների, քննադատ. ու գրականագիտ. հոդվածների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946):

ՊԵՐՈՒ (Perú), **Պերուի Հանրապետություն** (República del Perú), պետություն Հվ. Ամերիկայի արմ-ում: Սահմանակից է Կոլումբիային, Բրազիլիային, Բոլիվիային և Չիլիին: Տարածքը՝ 1285,2 հզ. *կմ²*, բն.՝ 10,8 մլն (2013): Մայրաքաղաքը՝ *Լիմա*: Պետ. լեզուները՝ իսպ., կեչուա: Կառավարման ձևը՝ նախագահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ Կոնգրեսը: Բաժանված է 25 վարչ. դեպարտամենտների: Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է: Անդամակցում է ՄԱԿ-ին, Մերկոսուրին, ԱՏՀԿ-ին ևն: Զարգացող երկիր է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 8,6 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է պղինձ, ոսկի, մոլիբդեն, ցինկ և այլ մետաղներ, նավթ, քիմիկատներ, տեքստիլ, սուրճ, մրգեր ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ, դեղորայք ևն: Դրամ. միավորը՝ նոր սոլ:

Հնում Պ-ի տարածքում բնակվել են հնդկացի ցեղեր: XV դ-ում այդ ցեղերի համադաշնությունն ինկերի գլխավորությամբ իրեն է ենթարկել հարևան ցեղերին և պետ. կազմավորումները, ստեղծել (1438) Տաուանտինսույու կաստայական պետությունը: XVI դ-ի սկզբին ափ ելած իսպ. կոնկիստադորները, 1532–36-ին Ֆ. Պիսարոյի և Դ. Ալմագրոյի գլխավորությամբ, գրավել են Տաուանտինսույուն: Հետագայում հանքերում աշխատելու համար գաղութարարներն Աֆրիկայից բերել են սևամորթ ստրուկներ: Ամերիկայի իսպ. գաղութներում 1810-ին սկսված պատերազմի արդյունքում Պ. 1821-ին հռչակվել է անկախ: 1825-ին Պ-ի հվ–արլ. մասը՝ Վերին Պ., առանձնացվել է որպես ինքնուրույն հանրապետություն՝ Բոլիվիա,

1879–83-ին մի կողմից՝ Չիլիի, մյուս կող-մից՝ Պ-ի և Բոլիվիայի միջև մղված պա-տերազմի (հրահրել էին Մեծ Բրիտանիան և Գերմանիան) հետևանքով Պ. կորցրել է (վերջնականապես՝ 1929-ին) բորակով հարուստ Տարապակա և Արիկա մարզե-րը: 1941–42-ին Էկվադորի դեմ պատերազ-մի արդյունքում Պ. նվաճել է շուրջ 200 հզ. *կմ*^{2} վիճելի տարածք Ամազոնիայում: 1968-ից մինչև 1980-ական թթ-ի կեսերը իշխանության ղեկին եղել են զինվ. կառ-յունները, 1992–2000-ին՝ ազգ. վերածննդի արտակարգ կառ-յունը, որը սահմանել է բռնիշխան. վարչակարգ: 1993-ին ըն-դունվել է նոր սահմանադրություն, որն զգալիորեն ընդլայնել է նախագահ Ֆու-ջիմորիի լիազորությունները: Զանգված. բողոքի ակցիաների ճնշման արդյունքում Ֆուջիմորին 2000-ին հրաժարական է տվել: Երկրում վերականգնվել են ժո-ղովրդավար. ինստ-ներ:

ՊԵՐՈՒԱԿԱՆ ԳՈԳՀՈՎԻՏ, Խաղաղ օվկ-ում՝ Հվ. Ամերիկա մայրցամաքի ստոր-ջրյա լանջերի և Արկ. խաղաղօվկիանոս. բարձր-յունների միջև: Լայն.՝ 20 *կմ*, գե-րակշռող բարձր.՝ 4400, առլցն՝ 5600 *կմ*:

ՊԵՐՈՒԱԿԱՆ ՀՈՍԱՆՔ, **Հումբոլդտի հոսանք**, սառը մակերևութ. հոսանք Խաղաղ օվկ-ում՝ Հվ. Ամերիկայի արմ. ափերի մոտ:

ՊԵՐՈՒԱԿԱՆ ՓՈՂՐԱԿ, խորքաջր. փող-րակ Խաղաղ օվկ-ի արլ-ում: Ձգվում է Հվ. Ամերիկա մայրցամաքի երկայնքով մոտ 1340 *կմ*: Միջին լայն.՝ 61 *կմ*, խոր.՝ մինչև 6601 *մ*: Հվ-արլ. մասի ափերի մոտ Ատա-կամա անապատն է:

ՊԵՐՈՒԱՑԻՆԵՐ (ինքնանվանումը՝ պերու-անոս), ժողդ, Պերուի հիմն. բնակչությու-նը (21,5 մլն, 2010): Հիմնականում մետիս ու մուլատ են: Լեզուները՝ իսպ. և կեչուա: Հավատացյալները կաթոլիկ են:

ՊԵՐՈՒՆ, կայծակի աստվածը հնդեվրոպ. և սլավոնառուս. դից-յան մեջ, հեթանոս պանթեոնի գերագույն աստվածությու-նը: Իշխանի և դրուժինայի հովանավորը Ռուսիայում IX–X դդ-ում (Կիևի իշխան Վլադիմիր I-ի օրոք):

ՊԵՐՈՒՋԱ (Perugia), ք. Կենտր. Իտա-լիայում, Ումբրիա մարզի և համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 168 հզ. (2010): Ունի օդանավակայան, հա-մալսարան (XIII դ-ից), պատկերասրահ, թանգարաններ: Պատմաճարտ. հուշար-ձաններից պահպանվել են էտրուսկների լեռն. պատի մնացորդներ (մ. թ. ա. IV–II դդ.), Սանտ Էրկանոլանո (XIII–XIV դդ.), Պալացցո Կոմունալե (XIII–XV դդ., այժմ՝ Ումբրիայի ազգ. պատկերասրահ) եկե-ղեցիները:

ՊԵՐՈՒՋԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Իտալիա-յի և Եվրոպայի հնագույն համալսարան-ներից: Հիմնադրվել է 1308-ին: 2017-ին ուներ շուրջ 13 հզ. ուսանող:

ՊԵՐՈՒՋԻՆՈ (Perugino, Վաննուչչի) Պիետրո (մոտ 1450–1523), Վաղ Վերա-ծննդի շրջանի իտալացի գեղանկարիչ: Կտավներում հովվերգ. տրամադրութ-յունը, բնանկար. ֆոնի նրբությունը զու-գորդել է կոմպոզիցիաների պարզության, հավասարակշռվածության հետ («Ապոլոն և Մարսիաս», 1490-ական թթ., «Ողբ առ Քրիստոս», մոտ 1494–95):

ՊԵՐՈՒՑ (Perutz) Մաքս Ֆերդինանդ (1914–2002), ավստրիացի կենսաքիմիկոս: 1936-ից՝ Մեծ Բրիտանիայում: Լոնդոնի թագավոր. ընկ-յան անդամ (1954): Հետա-զոտել է սպիտակուցների կառուցվածքի ձևափոխվածությունը, հաստատել է հե-մոգլոբինի մոլ-ի տարած. կառուցվածքը և առաջարկել նրա մոդելը: Նոբելյան մրց. (1962, Ջ. Կ. *Կենդրյուի* հետ):

ՊԵՐՔԼՈՐԱՏՆԵՐ, **գերքլորատներ**, գեր-քլորաթթվի՝ $HClO_4$-ի աղերը: Ջրում և օրգ. լուծիչներում լուծելի բյուրեղ. նյութեր են: Օգտագործվում են անվտանգ պայթուցիկ նյութերի և պայթուցիկ խառնուրդների արտադր-յան մեջ:

ՊԵՐՔԼՈՐՎԻՆԻԼԱՅԻՆ ԽԵԺԵՐ, *պոլիվի-նիլքլորիդի* լրացուցիչ քլորացմամբ (մինչև 65 %) ստացվող նյութերի՝ ԽՍՀՄ-ում ըն-դունված առևտրային անվանումը: Ջեր-մապլաստիկ նյութեր են, ոչ դյուրավառ: Ավելի ջերմակայուն են, քան պոլիվի-նիլքլորիդը, որը քլորացված է 56,8 %-ով: Պ. խ. օգտագործում են մանրաթելեր ձգե-լու և լաքեր պատրաստելու համար:

ՊԵՐՕՔՍԻԴԱԶՆԵՐ, ֆերմենտներ, որոնք կենդանի բջիջներում կատալի-զում են տարբեր նյութերի օքսիդացումը ջրածնի գերօքսիդով (H_2O_2) կամ օրգ. պերօքսիդներով: Առավել տարածված են բուս. Պ., որոնք մասնակցում են բույսերի շնչառությանը: Կծվիչի Պ. օգտագործում են բժշկության մեջ արյան և մեզի որոշ բաղադրամասերի կենսաքիմ. հետազո-տությունների ժամանակ:

ՊԵՐՕՔՍԻԴԱՅԻՆ ԹԹՈՒՆԵՐ, **գերօք-սիդային թթուներ**, մոլ-ում գերօքսիդա-յին խումբ՝ –O–O– պարունակող թթուներ: **Անօրգանական** Պ. թ-ում –O–O– խումբը մտնում է կոմպլեքս. անիոնի բաղադրութ-յան մեջ, օր.՝ գերօքսիբորաթթու՝ HBO_3, գերօքսի-միածծմբական թթու (Կարոյի թթու)՝ H_2SO_5 ևն: **Օրգանական** Պ. թ-ում –O–O– խումբը միացած է կարբոնիլային ածխածնին՝ RC(O)–O–O–H: Հայտնի են նաև նրանց աղերը, էսթերները և ացիլա-յին գերօքսիդները: Պ. թ-ով օլեֆիններն օքսիդացնելիս ստացվում են ալկենների օքսիդներ (Պրիլիժաևի ռեակցիա). ունեն կարևոր կիրառ. նշանակություն: Պ. թ. և նրանց աղերն ուժեղ օքսիդիչներ են: Ամո-նիումի՝ $(NH_4)_2S_2O_8$, և կալիումի՝ $K_2S_2O_8$, գերսուլֆատներն սպիտակեցնող նյութեր են և պոլիմերման հարուցիչներ:

ՊԵՐՕՔՍԻԴԱՅԻՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐ, **գերօքսիդային միացություններ**, քիմ. միացություններ, որոնց մոլ-ները պարունակում են գերօքսիդային –O–O– խմբեր: **Անօրգանական** Պ. մ-ից պար-զագույնը ջրածնի գերօքսիդն է՝ H_2O_2: Մետաղների Պ. մ-ի մոլ-ները բաղկացած են մետաղի կատիոններից և O_2^{2-} անիոն-ներից: Հայտնի են նաև O_2^- և O_3^- գերօք-սիդային անիոնները, մետաղների Պ. մ., որոնք կոչվում են **վերգերօքսիդներ** (Na_2O_2, K_2O_2, BaO_2 ևն) և **օզոնիդներ** (KO_2, PbO_2, BaO_4 ևն): **Օրգանական** Պ. մ. են ալկիլ և արիլ՝ R–O–O–R, նաև ացիլների՝ RC(O)–O–O–C(O)R գերօքսիդները, հիդրո-գերօքսիդները՝ R–O–O–H, պերօքսիդային թթուները՝ RC(O)–O–O–H, հետերոատոմին միացած գերօքսիդային խմբով միա-գությունները՝ R_3Si–O–O–Li, R_2B–O–O–R, օզոնիդները՝ F_3C–O–O–O–CF_3:

ՊԵՐՕՔՍԻԴՆԵՐ, **գերօքսիդներ**, ջրած-նի պրոտոն և մետաղների կատիոններ պարունակող միացություններ, որոնց մոլ-ներում կան գերօքսիդային –O–O– խմբեր, օր.՝ H_2O_2, K_2O_2, BaO_2: Պ. ուժեղ օքսիդիչներ են: Մետաղների Պ. ջրածնի գերօքսիդի աղերն են:

ՊԵՐՖԻԼՅԵՎ, Բորիս Վասիլևիչ (1891–1969), ռուս մանրէաբան: Պրոֆ. (1940): Մազանոթ. մանրադիտման հիմնադիրը: Աշխ-ները վերաբերում են տիղմերի միկ-րոֆլորայի, կապտականաչ ջրիմուռների էկոլոգիայի, երկաթի և մանգանի հան-քավայրերի առաջացման մեջ միկրոօր-գանիզմների դերին: ԽՍՀՄ Պետ. (1941), Լենինյան (1964) մրց-ներ:

ՊԵՐՖՈՒԶԻԱ, (լատ.՝ perfusio – ողողել, ներլցնել), արյան կամ որևէ լուծույթի ներարկումը մեկուսացված կամ ընդհ. շրջանառությունից անջատած օրգանի (մարմնի մասի) անոթներ:

ՊԵՑԻԼԱՅԻՆ ՁԿՆԵՐ (Poecillidae), ծա-ծանաատամնավորների կարգի ձկների ընտանիք: Հայտնի է շուրջ 20 սեռ և ավելի քան 150 տեսակ: ՀՀ-ում կլիմա-յավարժեցված է 1 տեսակ՝ միսսիսիպյան գամբուզիան: Մանր ձկներ են, երկ.՝ 2–20 *սմ*: Արուների հետնալողակի առաջին ճառագայթները վերածված են բեղմնա-վորման հատուկ օրգանի՝ գոնոպոդիումի: Ունեն ներքին բեղմնավորում, շատերը կենդանածին են:

ՊՋՏԻԿՅԱՆ Ասատուր Հարությունի (ծ. 1943), գեղանկարիչ: Ապրում է Փարի-զում: Գործերում («Սպասում», «Իջեցում խաչից», «Նոկտյուրն», «Մտորումներ», «Եվայի դիմակը», 1977, «Ռեքվիեմ մեռած քաղաքի», 1980, ևն) յուրովի է արտահայ-տել ժամանակի լարվածությունը, անորո-շությունը, պատերազմի սարսափները: Ուսկե մեդալ (1969, Ֆլորենցիա), Փարիզ ք-ի մրց. (1984):

ՊՋՏԻԿՅԱՆ Հարություն Մովսեսի (ծ. 1937), կրթ. և մշակույթի գործիչ, խմբ., նկարիչ: Փիլ-յան (1939), աստվածաբա-նության (1962), սոցիոլոգիայի (1966) դ-ր: Ֆրանսիայի գեղարվ-ի ակադ-ի պատվ. (1966), ՄՄ (1950-ից) անդամ, վրդ. (1962-ից): 1966–80 և 2006–14-ին՝ Փարիզի Սամվել Մուրադյան, 1986–96-ին՝ Հալեպի Մխիթարյան վարժարանների տնօրեն, 1981–86-ին՝ «Հայ ընտանիք» թերթի խմբ.: Հեղինակ է «Բոնի իսլամացած հայեր, Զ–ԺԹ դդ.» (2000), «Մխիթար վրդ. Սե-բաստացիի եւ Մխիթարեաններու նպաս-տը հայ մշակոյթին» (2001), «Պատմական հողերու վրայ» (2004), «Կիլիկիա եւ Մուսա լեռ (պատմական ակնարկ)» (2013) աշխ-ների, «Տայք, Բարձր Հայք. վրացական, թե հայկական» (2005) պատմաճարտ. երկի, ճամփորդ. նոթերի ևն:

ՊՋՈՒԿՆԵՐ, **կորյակներ**, ճարպազեղձերի և մազապարկերի բորբոք. հիվանդութ-յուն. բնորոշվում է ճակատի, քթի, թևերի, մեջքի վերին մասի վրա ճարպ. գորշ սև խցանների (կոմեդոններ) և հանգույցնե-րի առաջացմամբ:

ՊԸԼԸ ՊՈՒԿԼԻ (Խենթ Պողոս, 1731–1810), զվարճախոս-առակաբան: Եղել է Վա-րանդայի իշխան Մելիք-Շահնազարի զվարճախոս-կատակաբանը: Մակար *Բարխուդարյանը* 1883-ին գրառել է Պ. Պ-ու 189 զվարճախոսություն և հրատա-րակել:

«ՊԸԼԸ ՊՈՒԿԼԻ», երգիծ. ամսաթերթ (1991-ից, Ստեփանակերտ): Արցախի գրողների միության հրտ-յուն: Խմբ-ներ՝ Վարդան Հակոբյան, Հրաչյա Բեգլարյան, Դավիթ Միքայելյան (2007-ից):

ՊԻ (հուն. π տառը, մաթ. հաստատուն մե-ծություն), հավասար է շրջանագծի երկ-յան հարաբերությանը՝ նրա տրամագծին. տրանսցենդենտ թիվ է. արտահայտվում

է անվերջ ոչ պարբեր. տասնորդ. կոտորակով. π = 3,141592...:

ՊԻԱԺԵ (Piaget) Ժան (1896–1980), շվեյցարացի հոգեբան: Բանականության գործառն. հայեցակարգի և գենետիկ. ճանաչողության տեսության հիմնադիրը: Հեղինակ է «Երեխայի խոսքն ու մտածողությունը» (Բ. Ինհելդերի հետ), «Բանականության հոգեբանություն» (1946) աշխ-ների: Հրատարակել է «Փորձարարական հոգեբանություն» բազմահատորյակը (Պ. Ֆրեսի հետ):

ՊԻԱՅ (Piai), հրվանդան Մալակա թ–կղզու հվ–ում՝ Մալայզիայում: Ասիա մայրցամաքի հվ. ծայրակետը (1°16′ հս. լայն–յան):

ՊԻԱՆՔ, Ապիանք, Ոպիանք, Պիտանք, գվո *Արցախ*ի նահանգ–ում: Հավանաբար Խաչենագետի և Կարկառ գետի միջև՝ Բայան գ–ի շրջանում:

ՊԻԱՉԵՆՅԱ (Piacenza), ք. Իտալիայի Էմիլիա–Ռոմանիա մարզում՝ Պո գետի ափին: Բն.՝ 105 հզ. (2010): Կարևոր երկաթ. հանգույց է, գետ. նվինգստ: Ունի համալսարան, ժամանակակից արվ–ի պատկերասրահ ևն: Շարտ. հուշարձաններից են տաճարը (XII–XIII դդ.), Պալացցո դել Կոմունեն (XIII դ–ի սկիզբ) պալատը, Մադոննա դի Կամպանի եկեղեցին (XVI դ.) ևն:

ՊԻԱՏՐԱ ՆԵԱՄՑ (Piatra Neamt), ք. Ռումինիայում՝ Բիստրիցա գետի ափին, Նիամց ժուդեցի վարչ. կենտրոնը: Բն.՝ 115 հզ. (2010):

ՊԻԱՅՈԼԼԱ (Piazzolla) Աստոր (1921–1992), արգենտինացի կոմպոզիտոր, դիրիժոր: Հեղինակ է բազմաթիվ տանգոների (կամեր. անսամբլների և նվագախմբերի հետ), նաև խոշոր պարտիտուրների, որոնք հարուստ են արգենտին. պար. ռիթմերով:

ՊԻԱՑՑԵՏՏԱ (Piazzetta) Ջովաննի Բատտիստա (1682–1754), իտալացի գեղանկարիչ: Վառ կենս. կերպարները («Գուշակուհին», 1740, ևն) աչքի են ընկնում կոմպոզիցիայի աշխուժությամբ, լուսաստվերի նրբությամբ:

ՊԻԱՈՒ (Piau), Բրազիլիայի նահանգ: Տարածքը՝ 256 հզ. *կմ*², բն.՝ 3,1 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ Տերեզինա:

ՊԻԱՖ (Piaf) Էդիտ (Էդիտ Ջովաննա Գասիոն, 1915–1963), ֆրանսիացի երգչուհի (շանսոնիե): Հանդես է եկել նաև մյուզիք–հոլլում: Առանձնացել է վառ անհատականությամբ, ձայնի հարուստ նրբերանգներով, կատարման արտահայտչականությամբ: Իր որոշ երգերի տեքստերի և երաժշտության հեղինակն է, ֆրանս. քնար. երգի վարպետ: Ելույթներ է ունեցել Շառլ *Ազնավուրի* հետ: Նկարահանվել է կինոյում («Անանուն սայլ», «Փարիզը շարունակում է երգել» ևն):

ՊԻԳԱԼ (Pigalle) Ժան–Բատիստ (1714–1785), ֆրանսիացի քանդ.: Ստեղծել է դից. և ժանր. արձաններ («Մույկը կապող Մերկուրիոսը», 1744), մահարձաններ, հուշարձաններ, Վոլտերի արձանը (1776), բնութագր. կիսանդրիներ:

ՊԻԳՄԱԼԻՈՆ, առասպել. քանդ. հունւ. դից–յան մեջ, Կիպրոսի արքա. սիրահարվել է իր կերտած Գաղաթեայի արձանին: Աֆրոդիտեն Պ–ի խնդրանքով կենդանացրել է արձանը, և Գաղաթեան դարձել է Պ–ի կինը: Փաստով՝ իր ստեղծագործությանը սիրահարված մարդ:

ՊԻԳՄԵՆՏԱՅԻՆ ԲՋԻՋՆԵՐ, **լուսակիրներ**, մարդու և կենդանիների մարմնի հատուկ բջիջներ, որոնց բջջապլազմաները պարունակում են *պիգմենտներ*: Պայմանավորում են օրգանիզմի ծածկույթների և որոշ ներքին օրգանների գունավորումը:

ՊԻԳՄԵՆՏՆԵՐ (կենսբ.), 1. **գունակներ**, օրգանիզմների հյուսվածքների գունավոր նյութեր: Բույսերում մասնակցում են *լուսասինթեզին* (քլորոֆիլներ, կարոտինոիդներ), կենդանիների օրգանիզմներում՝ հյուսվածք. շնչառությանը (հեմոգլոբիններ), տեսող. շարժընթացներին (տեսող. ծիրանիում), օրգանիզմները պաշտպանում են ԵԿՇ–ի վտանգավոր ազդեցությունից (բույսերում՝ կարոտինոիդներ, ֆլավոնոիդներ, կենդանի օրգանիզմներում՝ մելանիններ): Որոշ Պ. օգտագործում են սննդի արդ–յան և բժշկության մեջ: 2. Գունանյութեր, ներկվող նյութում չլուծվող գունավոր նուրբ փոշիներ, որոնք օգտագործում են պլաստմասսաները, ռետինը, թուղթը, լաքերը, արհեստ. և սինթետիկ մանրաթել. զանգվածը, արհեստ. կաշին գունավորելու, տպագր., շին. և այլ ներկեր պատրաստելու, գործվածքը ներկելու համար:

ՊԻԳՈՊԱԳՆԵՐ (< հունւ. pyge – սրբոսկր և pagos – սերտաճում), զարգացման արատ, որի դեպքում երկվորյակները սերտաճած են սրբոսկրի շրջանում: Բուժումը՝ վիրահատ.: Տես նաև *Քսիֆոպագներ*:

ՊԻԳՈՍՏԻԼ (< հունւ. pyge – սրբոսկր, պոչ և stylos – սյունև, հենարան), թռչունների մեծամասնության ոսկր՝ ձևավորված վերջին 4–6 պոչային ողներով: Պ–ին են ամրանում պոչի փետուրները:

ՊԻԳՈՒ (Pigou) Արթուր Սեսիլ (1877–1959), անգլիացի տնտեսագետ: Հիմնավորել է տնտ–յան պետ. կարգավորման անհրաժեշտությունը: «Բարեկեցության տնտեսական տեսության» ստեղծողներից, որը մի շարք զարգացած երկրներում դարձել է սոցիալ. քաղ–յան հիմքը:

ՊԻԳՈՒԼԵՎՍԿԱՅԱ Նինա Վիկտորովնա (1894–1970), ռուս. պատմաբան, բյուզանդագետ, արևելագետ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1946): Աշխ-ները վերաբերում են Բյուզանդիայի, Իրանի, Ասորիքի, Մերձ. Արևելքի, Արաբիայի հաս–տնտ. հարաբերությունների, գրկ–յան և աղբյուրագիտ–յան խնդիրներին, շոշափել է նաև հայագիտ–յան հետ կապված հարցեր:

ՊԻԴՈՒ դը Սենտ–Օլոն Լուի–Մարի (Pidou de Saint–Olon, Louis–Marie, 1637–1717), Թեաթինյան օրդենի վանական, կաթոլիկ քարոզիչ: Լեհահայերի կաթոլիկացման գործում Գալանոս Կղեմեսի հետևորդը: 1666–71 և 1674–78–ին՝ *Լվովյան հայկական կոլեգիայի* ռեկտոր: Պ–ի «Համառոտ զեկույց...» հաշվետվությունը (հայ., հրտ.՝ 1884, Կարապետ *Եզյանի* կազմած «Բռնի միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ» ժող–ում) բռնի կաթոլիկացման դեմ լեհահայերի պայքարի պատմության կարևոր աղբյուր է:

ՊԻԵԶՈԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՖԵԿՏ (հունւ.՝ piezo – ճնշել), էլ. բևեռացման առաջացումը նյութի առանձ. ձևախախտումների ժամանակ էլ. դաշտի բացակայության պայմաններում (**ուղիղ Պ. է.**) և էլ. դաշտի ազդեցությամբ (**հակադարձ Պ. է.**): Առաջին հետազոտությունը կվարցի բյուրեղների վրա կատարել են (1880) Ժ. և Պ. *Կյուրիները*: Պ. է. հայտնաբերվել է ավելի քան 1500 նյութերում, դիտվում է բոլոր սեգնետոէլեկտրիկ և բազմաթիվ պիրոէլեկտրիկ նյութերում:

ՊԻԵԶՈԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊԻՉՆԵՐ, մեխ. և ձայն. տատանումներն էլեկտրականի (և հակառակը) վերածող կերպափոխիչներ: Աշխ–ը հիմնված է *պիեզոէլեկտրական էֆեկտի* վրա: Օգտագործվում են որպես անդրաձայնի հզոր աղբյուրներ, ձայնի ճառագայթիչներ և ընդունիչներ, միկրոֆոններ և հիդրոֆոններ, ռեզոնատորներ, էլ. զտիչներ, մեխ. լարվածությունների տվիչներ:

ՊԻԵԶՕՄԱԳՆԻՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, պիեզոմագնիսական էֆեկտ, հակաֆեռոմագնիսների մագնիսացումն արտաքին ճնշումների ազդեցությամբ՝ նրանց բյուրեղ. ցանցի առաձգ. ձևախախտումների արդյունքում: Հայտնաբերվել է CoF_2, MnF_2, α–Fe_2O_3–ում:

ՊԻԵԶՈՉԱՓ, գազերի, հեղուկների և պինդ մարմինների սեղմելիության, ինչպես նաև գծային ձևախախտումների չափման սարքեր:

ՊԻԵԶՕՔՎԱՐՑ, քվարցի անգույն կամ գունավոր բյուրեղներ՝ առանց կողմնակի միներալների, գազի, հեղուկների, ճեղքերի, կրկնաբյուրեղների առկայության: Կիրառվում է ռադիոէլեկտրատեխնիկայում՝ պիեզոէլեկտրականության շնորհիվ: Լայնորեն օգտագործվում է նաև արհեստ. աճեցված Պ.:

ՊԻԵԽԱ Էդիտա Ստանիսլավովնա (ծ. 1937), ռուս. երգչուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1988): 1955–ից՝ Լենինգրադի Էստրադայի մեներգչուհի: 1976–ին հիմնադրել է իր անսամբլը, երգացանկում՝ ռուս, ֆրանսիացի, լեհ կոմպոզիտորների երգերից:

ՊԻԵՄՈՆՏ (Piemonte), մարզ Իտալիայի հս–արմ–ում: Տարածքը՝ 25,4 հզ. *կմ*², բն.՝ 4,4 մլն (2014): Վարչ. կենտրոնը՝ *Տուրին*:

ՊԻԵՌՈ ԴԵԼԼԱ ՖՐԱՆՉԵՍԿԱ (Piero della Francesca, մոտ 1410–ական թթ.–1492), Վաղ Վերածննդի շրջանի իտալացի գեղանկարիչ: Գործերին բնորոշ են կերպարների վեհությունը, ձևերի ծավալայնությունը, հեռանկարչ. տարածություն կառուցելու հետևողականությունը («Քրիստոսի մկրտությունը», 1450–55, Արեցցոյի Սան Ֆրանչեսկո եկեղեցու որմնանկարները, 1452–66): Հեղինակ է «Հեռանկարը գեղանկարչության մեջ», «Գրքույկ հինգ կանոնավոր մարմինների մասին» աշխ-ների:

ՊԻԵՍ (ֆրանս.՝ pièce – մաս), 1. դրամատիկ. ստեղծագործություն, թատերախաղ. ներառում է դրամատիկ. ժանրեր՝ ողբերգություն, դրամա, կատակերգություն, ֆարս, վոդևիլ և տարբեր տեսակի բեմ. կոմպոզիցիաներ: 2. (Երաժշտ.) ոչ մեծ երաժշտ. ստեղծագործություն: Տերմինը հիշատակվում է XVII–XVIII դդ–ի ֆրանս. երաժշտության մեջ («Պիես կլավեսինի համար», «Պիես վիոլայի համար» ևն):

ՊԻԵՏՐՈ ԴԱ ԿՈՐՏՈՆԱ (Pietro da Cortona, Պիետրո Բեռետտինի, 1596–1669), իտալացի գեղանկարիչ, ճարտ.: Պատրանք. որմնանկարչության վարպետ (Հռոմի Բարբերինիի պալատի առաստաղապատկերը, 1632–39): Գործերն առանձանում են զարգացած բարոկկոյին բնորոշ բուռն դինամիկայով, գուներանգի լուսաօդ. հագեցվածությամբ: Շարտ. կառույցներում վարպետորեն է համակցել կորագիծ մակերեսները (Հռոմի Սանտա Մարիա դելլա–Պաչե եկեղեցին, 1656–57):

ՊԻԶԱ (Pisa), ք. Կենտր. Իտալիայի Տոսկանա մարզում, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 80,4 հզ. (2010): Ունի օդանավակայան, համալսարան

(որտեղ սովորել և աշխատել է Գ. Գալիլեյը), Սան Մատտեո ազգ. թանգարանը ևն: Պատմաճարտ. հուշարձաններից տաճար. համալիրը (XI–XIII դդ., բրոնզե դուռը՝ XII դ.), Կամպանիլան («ընկնող աշտարակը»՝ XII–XIV դդ.) և մկրտարանը (1152) ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում են:

Պ–ում հայերի մասին հնագույն հիշատակությունները XII դ–ից են: 1920–ին Պ–ում գործել են՝ «Հայոց տուն», Սբ Անտոն հայկ. եկեղեցին, նաև վանք, որտեղ 1350–60–ին ընդօրինակվել են ձեռագրեր:

ՊԻԶԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Իտալիայի և Եվրոպայի հնագույն համալսարաններից: Հիմնադրվել է 1343–ին: 2016–ին ուներ շուրջ 57 հզ. ուսանող:

ՊԻԶԱՆԵԼԼՈ (Pisanello, Անտոնիո դի Պուչչո դա Չերրետո, 1395–1455), Վաղ Վերածննդի շրջանի իտալացի գեղանկարիչ, մեդալագործ (նաև մեդալագործության հիմնադիրը): Գործերում գույնի և գծանկարի նրբագեղությունը, քնարականությունը, գոթ. ոճի պայմանականությունը համադրել է մարդու և բնության նուրբ դիտողականության հետ («Սուրբ Գևորգը և արքայադուստրը», մոտ 1435–38, կենդանիների գծանկարներ, դիմանկարչ. մեդալներ):

ՊԻԶԱՆՈ (Pisano), XIII–XIV դդ–ի մի շարք իտալացի քանդ–ների և ճարտ–ների մականունը: 1. **Նիկկոլո Պ.** (մոտ 1220–1278–ի և 1284–ի միջև), Նախավերածննդի հիմնադիրներից: Ստեղծել է պլաստիկ., հզոր նկարագրով կերպարներ (Պիզայի մկրտարանի ամբիոն, 1260): 2. Որդին՝ **Ջովաննի Պ.** (մոտ 1245–1314–ից հետո), քանդակներում համադրել է Նախավերածննդի շրջանի ավանդույթներն ու գոթ. ոճի արտահայտչամիջոցները (Սիենայի տաճարի ճակատի արձանները, մարմար, 1284–99): 3. **Անդրեա Պ.** (մոտ 1290–1348/49), Նախավերածննդի շրջանի կոմպոզիցիաների պարզությունը միահյուսել է գոթ. ձևերի ոճավորման հետ (Ֆլորենցիայի մկրտարանի հվ. դռան բարձրաքանդակները, 1330–36): 4. Որդին՝ **Նինո Պ.** (մոտ 1315–1368), ֆրանս. գոթ. ոճի ազդեցությամբ ստեղծել է նուրբ, ռիթմի ճկունությամբ քանդակներ («Տիրամայր», 1343–47, Օրվիետոյի տաճարի թանգարան):

ՊԻԹԵԿԱՆԹՐՈՊԻՄՆԵՐ (< հուն. pithekos – կապիկ և antropos – մարդ), **կապկամարդ**, Homo erectus տեսակի հնացած անվանումը: Անվանել է Է. Դյուբուան Ճավա կղզու գտածոներին՝ որպես «միջանկյալ օղակ» կապիկների և մարդկանց միջև:

ՊԻԹՈՆ, հրեշավոր օձ հուն. դից–յան մեջ, որին ծնել է *Գեա* աստվածուհին: Սպանել է *Ապոլոնը* (այստեղից էլ՝ Ապոլոնի՝ Պիթոնասպան մականունը):

ՊԻԹՈՆՆԵՐ (*Pýthonidae*), *վիշապների* ընտանիքի օձերի ենթաընտանիք: Մարմնի երկ.՝ մինչև 10 *մ* (ցանցավոր Պ.): Հայտնի է 22 տեսակ՝ Արլ. կիսագնդի արևադարձներում և մերձարևադարձներում: Խոշոր Պ. կարող են կուլ տալ ամբողջ շնագայլ, երիտասարդ վարազ ևն: Մարդկանց վրա հազվադեպ են հարձակվում: Վազքային Պ. գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՊԻԼԿՈՄԱՅՈ (Pilcomayo), գետ Հվ. Ամերիկայում, Պարագվայի աջ վտակը: Երկ.՝ 1200 *կմ*, ավազանը՝ 160 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 170 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է ստորին հոսանքում: Գործում է ջրէկ:

ՊԻԼՈԿԱՐՊՈՒՍ (Pilocárpus), սատապազգիների ընտանիքի մշտադալար ծառերի ցեղ: Հայտնի է 20 տեսակ՝ Ամերիկայի և Վեստ Ինդիայի արևադարձներում: Աշակվում է նաև Կովկասի սևծով. ափամերձ շրջաններում: Գեղազարդիչ է, տերևներից ստանում են պոլիկարպին ալկալոիդը:

ՊԻԼՈՆ (Pilon) Ժերմեն (մոտ 1525–1590), Վերածննդի շրջանի ֆրանսիացի քանդ.: Հեղինակ է մահարձանների (Հենրի II–ի և Եկատերինա Մեդիչիի, մոտ 1470, Ռեն դը Բիրագի, 1583–85), կիսանդրիների, բարձրաքանդակների, մեդալների:

ՊԻԿԱՊ (անգլ.՝ pick up – բարձրացնել, վերցնել), ուղևորաբեռնատար թեթև ավտոմեքենա, բեռնատարողությունը՝ մինչև 0,5 *տ*: Հաճախ փակ կամ բաց թափքի կողեզրերի երկայնքով՝ բացովի նստարաններ:

ՊԻԿԱՍՍՈ (Picasso, Ռուիս ի Պիկասոս) Պաբլո (1881–1973), իսպանացի գեղանկարիչ: 1904–ից՝ Ֆրանսիայում: 1900–ական թթ–ին («երկնագույն» և «վարդագույն» շրջաններ) ստեղծել է գործեր՝ հիմնականում ողբերգ. մենության և թշվառության («Ծեր մուրացկանը տղայի հետ», 1903), թափառաշրջիկ դերասանների («Աղջիկը գնդի վրա», 1905) թեմաներով: 1907–ին հիմնադրել է (Ժ. *Բրաքի* հետ) *կուբիզմը* («Հովհարով կինը», 1909): Պ–ի ստեղծագործության մարդասիր. և իռացիոնալ–ֆանտաստիկ. հատկանիշները նկատելի են օֆորտների «Մինոտավրոմախիա» շարքում (1930–ական թթ.) և հակաֆաշիստ. թեմայով «Գեռնիկա» (1937) պաննոյում: Պ. աշխատել է նաև գրաֆիկայի, քանդ–յան, խեցեգործության բնագավառում: Խաղաղության (1950), Լենինյան (1962) միջազգ. մրց–ներ:

ՊԻԿԱՐ (Picard) Ժան (1620–1682), ֆրանսիացի աստղագետ: Փարիզի ԳԱ անդամ: Փարիզի աստղադիտարանի հիմնադիրներից: Չափել է (1660–70) միջօրեականի աղեղի երկ–յունը Փարիզի և Ամիենի միջև, եզրակացրել, որ Երկրագունդը ճիշտ գնդի ձև չունի: Հրատարակել է աստղագիտ. 1–ին տարեգիրքը (1679):

ՊԻԿԱՐ (Piccard) Օգյուստ (1884–1962), շվեյցարացի ֆիզիկոս, օդաչու, կոնստրուկտոր: Իր պատրաստած ստրատոստատներով բարձրացել է մինչև 15 780 *մ* (1931) և 16 370 *մ* (1932), բաստիսկաֆներով իջել՝ մինչև 1380 *մ* (1948) և 3160 *մ* (1953) խոր–ներ:

ՊԻԿՇԱ, (Melanogrammus aeglefinus), *ձողաձկների* ընտանիքի ձուկ: Արտաքինից շատ նման է ձողաձկան, սակայն Պ–ի կրծքային լողակների վրա կան մեկական մեծ սև բծեր: Երկ.՝ մինչև 1 *մ*, կ. զ.՝ մինչև 19 *կգ*: Ապրում է Ատլանտ. օվկ–ի ավազանի բարեխառն ջրերում: Արդյունագործ. ձուկ է:

ՊԻԿՈԼԻՆՆԵՐ, **մոնոմեթիլպիրիդիններ**, հայտնի են 2–, 3– և 4– Պ., որոնք անգույն հեղուկներ են, $t_{եռ.}$՝ 128,8, 144 և 145,3°C: Պարունակվում են քարածխի խեժում: Կիրառում են դեղամիջոցների (նիկոտինաթթվի, կորդիամինի, ֆտիվազիդի, B_6 վիտամինի), հերբիցիդների արտադրյան մեջ, նաև որպես լուծիչներ և էթիլ սպիրտի բնափոխման համար:

ՊԻԿՈՐՆԱՎԻՐՈՒՄՆԵՐ, ՌՆԹ պարունակող մանր վիրուսների ընտանիք, որոնք հարուցում են մարդու և կենդանիների վարակիչ հիվանդություններ (օր.՝ *ողնուղեղապատկանաբորբ, պոլիոմիելիտ* ևն): Պ–ի շարքից են ռինովիրուսները, էնտերովիրուսները, դաբաղի վիրուսը ևն:

ՊԻԿՏԵ (Pictet) Ամե (1857–1937), շվեյցարացի քիմիկոս–օրգանիկ: Սինթեզել է նիկոտինը (1904) և այն բաժանել օպտիկ. հակապատկերների (անտիպոդներ):

ՊԻԿՐԻՏ, տիպիկ բյուրեղ. հրային ապար՝ կազմված *ալգիտից* ու *օլիվինից* և տարբեր միներալների աննշան խառնուրդներով: Պ–ում հաճախ հանդիպում է սուլֆիդների ցան:

ՊԻԿՈՒԼ, Վալենտին Սավվիչ (1928–1990), ռուս գրող: Հեղինակ է «Գրչով և սրով» (1972), «Խոսք և գործ» (գիրք 1–2, 1974–75), «Ֆավորիտ» (հ. 1–2, 1984, հայ.՝ 1989), «Պատի՛վ ունեմ» (գիրք 1–2, 1988–89) պատմավեպերի, ՀՄՊ–ի մասին «Օվկիանոսյան պարեկ» (1954) վեպի: Հայ. հրատարակվել են «Բայազետ» (1983) վեպը, «Մանրապատումներ» (1986) պատմ. նովելների ժող–ը:

ՊԻԿՖՈՐԴ (Pickford) Մերի (1892–1979), ամերիկացի կինոդերասանուհի: Համաշխ. ճանաչման են արժանացել այն ֆիլմերը, որտեղ նա ստեղծել է համեստ, բարեհոգի, դեռահաս աղջկա զգացմունք. կերպար («Խեղճ փոքրիկ հարուստ աղջիկը», «Պոլիաննա», «Իմ ամենալավ աղջիկը», «Պչրուհին» ևն): Հեղինակ է «Լույս և ստվեր» ինքնակենսագր. գրքի: «Օսկար» մրց. (1930, 1975):

ՊԻՀՌՈՆ, **Պիռոն Էլիսացի** (Pyrrho Eleus, մ. թ. ա. մոտ 365–275), հույն փիլ.: Սկեպտիցիզմի (պիհռոնականություն) հիմնադիրը: Ըստ Պ–ի՝ իրերի մասին մարդկային դատողություններն անհիմն են, հարկավոր է առհասարակ զերծ մնալ դատողություններից (էպոխե) և պահպանել անվրդովվության (ատարաքսիա), կրքերից ու ապրումներից ազատ (ապաթիա) վիճակը: *Դավիթ Անհաղթն* իր «Սահմանք իմաստասիրութեան» երկում քննադատել է Պ–ի սկեպտիցիզմը և ազնոստիցիզմը:

ՊԻՂԱՏՈՍ ՊՈՆՏԱՑԻ, **Պիղատոս Պոնտիուս** (Pontius Pilatus), հռոմեացի կառավարիչ Հուդա նահզ–ում՝ 26–36–ին: Ըստ Հովսեպոս Փլավիոսի և *Նոր կտակարանի*՝ Պ. Պ., հակառակ իր ներքին համոզմունքի, *Հիսուս Քրիստոսին* դատապարտել է խաչելության: Արյունահեղության մեջ անմեղությունը խորհրդանշող հինհրեական սովորույթի համաձայն՝ նա ժողդ–ի առջև ձեռքերը լվացել է ջրով (այստեղից էլ՝ «ձեռքերը լվանալ» հայտնի արտահայտությունը)՝ ի նշան անմեղության: Հաշվեհարդարի ենթարկված սամարացիների բողոքով 36–ին հեռացվել է պաշտոնից և ուղարկվել Հռոմ:

ՊԻ–ՄԵԶՈՆՆԵՐ, **պիոններ** (π), 3 անկայուն *հադրոնների* խումբ, որոնց սպինը 0 է, զանգվածը՝ մոտ 270 էլեկտրոնի զանգված (հադրոնի համար՝ ամենափոքրը), կազմված է երկու լիցքավորված (π^-, π^+) և 1 չեզոք (π^0) Պ–մ–ից:

ՊԻՄԵՆՈՎ, Յուրի (Գեորգի) Իվանովիչ (1903–1977), ռուս. գեղանկարիչ, գրաֆիկ, բեմանկարիչ: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1970): ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի ակադ. (1962): Հեղինակ է քնար., քաղաք. ժանր. տեսարանների, բանկարների («Նոր Մոսկվա», 1937, «Նոր թաղամասեր», շարք, 1963–67), դիմանկարների, ներկայացումների ձևավորումների: ԽՍՀՄ Պետ. (1947, 1950), Լենինյան (1967) մրց–ներ:

ՊԻՄՈՆԵՆԿՈ Նիկոլայ Կոռնիլևիչ (1862–1912), ուկրաինացի գեղանկարիչ: Պերեդ–

վիժնիկ: Բանաստեղծորեն է պատկերել ուկրաինացի ժողղ–ի կենցաղն ու կյանքը՝ զուգակցելով ժանր. տեսարանը բնանկարի հետ («Ամպրոպից առաջ», 1906): «Մոլեռանդության զոհը» (1899) կտավում մերկացրել է ժամանակի հոռի երևույթները:

ՊԻՅՈՒՐԱ (Piura), ք. Պերուի հս–արլ–ում՝ *Պանամերիկյան խճուղու* վրա: Համանուն դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 394,5 հզ. (2010): Ունի օդանավակայան, համալսարան: Երկրի հս. մասի տնտ. և բամբակի առևտրի կենտրոնն է: Հիմնադրվել է 1532–ին:

ՊԻՆԱԵՎԱ Լյուդմիլա Իոսիֆովնա (ծ. 1936), ռուս. մարզուհի (թիավարուհի): ԽՍՀՄ ս. վ. վ. (1964): Օլիմպ. խաղերի եռակի (1964, 1968, 1972), աշխարհի, Եվրոպայի և ԽՍՀՄ բազմակի (1960–73) չեմպիոն:

ՊԻՆԱՆԳ, նհնգ Մալայզիայի կազմում՝ Մալակա թ–կղզում: Տարածքը՝ 1 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,72 մլն (2016): Վարչ. կենտրոնը՝ *Ջորջթաուն*:

ՊԻՆԱՐ ԴԵԼ ՌԻՈ (Pinar del Rio), ք. Կուբայի արմ–ում, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 160 հզ. (2010):

ՊԻՆԳՎԻՆՆԵՐ (Spheniseidae), ջրլող թռչունների կարգ: Թևերը նման են մաշկաթաթերի: Երկ.՝ 40 *սմ*–ից (գալապագոս. Պ.) մինչև 1,2 *մ* (կայսեր. Պ.), կ. զ.՝ 3–42 *կգ*: Որոշ տեսակներ գլխի վրա ունեն դեղին բծեր կամ փուխուլ: Հայտնի է 17 տեսակ՝ հիմնականում Անտարկտիդայում և Հվ. կիսագնդի բարեխառն գոտում: Ապրում են ծովերի մերձափնյա շրջաններում, բնադրում են գաղութներով: Գալապագոս. Պ. գրանցված են ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՊԻՆԴ ԷԼԵԿՏՐՈԼԻՏՆԵՐ, բարձր էլեկտրահաղորդականությամբ օժտված բյուրեղ. նյութեր, որոնց հաղորդականությունը պայմանավորված է իոնների շարժումով: Կիրառում են հոսանքի քիմ. աղբյուրներում և կոնցենտրացիայի չափման տվիչներում, օր.՝ ZrO_2–ի հիմքով տվիչն օգտագործում են հալած մետաղներում O_2–ի որոշման համար:

ՊԻՆԴ ԼՈՒԻՄԻՆԻՖՈՐՆԵՐ, համասեռ պինդ նյութեր, որոնք կազմված են մի քանի բաղադրամասերից, որոնց կոնցենտրացիաները տվյալ ջերմաստիճանում և ճնշման տակ կարող են փոփոխվել որոշակի սահմաններում՝ առանց համասեռության խախտման: Պ. լ. են շատ մետաղ. համաձուլվածքներ (օր.՝ պողպատը, բրոնզը), միներալներ (դաշտ. սպաթներ, փայլարներ ևն), ապակիներ:

ՊԻՆԴ ՄԱՐՄԻՆ, նյութի ագրեգատ. վիճակ. բնորոշվում է ձևի կայունությամբ և ատոմների ջերմ. շարժման բնույթով. ատոմները կատարում են թույլ տատանումներ հավասարակշռության վիճակի շուրջ: Տարբերում են բյուրեղ. և ամորֆ Պ. մ–ներ: Առաջին դեպքում գոյություն ունի ատոմների հավասարակշռության վիճակի տարած. պարբերականություն: Ամորֆ Պ. մ–ում ատոմները տատանվում են քաոսային դասավորված կետերի շուրջ: Ատոմների միջև կապը կարող է լինել իոնական, կովալենտ, մետաղ. ևն, որով և պայմանավորված են Պ. մ–ի ֆիզ. հատկությունները: Պ. մ–ի էլ. և որոշ այլ հատկություններ հիմնականում պայմանավորված են նրա ատոմի արտաքին էլեկտրոնների շարժման բնույթով: Ըստ էլ. հատկանիշների՝ Պ. մ–ները լինում են դիէլեկտրիկներ, կիսահաղորդիչներ և մետաղներ, ըստ մագնիս. հատկանիշների՝ դիմագնիսներ, պարամագնիսներ և կարգավորված մագնիս. կառուցվածքով մարմիններ:

ՊԻՆԴ ՄԱՐՄՆԻ ՖԻԶԻԿԱ, ֆիզիկայի բաժին. ուսումնասիրում է *պինդ մարմինների* կառուցվածքն ու ֆիզ. հատկությունները և մշակում այդ հատկությունները բացատրող տես. պատկերացումները:

ՊԻՆԴ ՄԱՐՄՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՌԴԱ, ՌԴ առաջատար ինստ–ներից, խոշոր գիտ. կենտրոն Չեռնոգոլովկայում (Մոսկվայի մարզ): Հիմնադրվել է 1963–ին, հիմնադիր–կազմակերպիչներ՝ Գ. Վ. Կուրդյումով, Յ. Ա. Օսիպյան, Չ. Վ. Կապեցկի: Ուսումնասիրության հիմն. ուղղությունները՝ կոնդենսված վիճակի ֆիզիկա, ֆիզ. նյութագիտ–յան բարձր տեխնոլոգիաներ: Այս ինստ–ում աշխատել և վերապատրաստում են անցել բազմաթիվ հայ գիտնականներ:

ՊԻՆԴԱՐՈՍ (Pindarus, մ. թ. ա. մոտ 518–442/438), հույն քնարերգակ–բանաստեղծ: Հեղինակ է կրոն. հանդիսավոր երգերի, պաշտամունք. հիմների, օլիմպ., Դելփյան և սպորտ. այլ խաղերի հաղթողներին նվիրված գովաբան. երգերի: Պ–ի առանձին գործեր հայ. թարգմանվել են դեռևս XIX դ–ում («Բազմավէպ», 1856): Հայ. հրատարակվել է «Ներբողներ» (1992) ժող–ը:

ՊԻՆԴԵՄՈՆՏԵ (Pindemonte) Իպպոլիտո (1753–1828), իտալացի բանաստեղծ: Հեղինակ է բռնակալությունը դատապարտող բանաստեղծությունների («Ֆատա Մորգանա», 1782, ևն), պոեմների («Ֆրանսիա», 1789, ևն), ողբերգության («Արմինի», 1804):

ՊԻՆԴԻՆԾԱՆ, ք. Կենտր. Չինաստանում՝ Հենան պրովինցիայում: Բն.՝ 890 հզ. (2010): Ունի համալսարան:

ՊԻՆԴ–ՄԱԼՄՆԱՅԻՆ ԼԱԶԵՐ, օպտիկ. քվանտ. գեներատոր, որի ակտիվ միջավայրը բյուրեղ է կամ ակտիվարարների խառնուրդով ապակի: Առանձին խումբ են կազմում կիսահաղորդչ. լազերները: Առավել տարածված են սուտակի (Al_2O_3՝ Cr^{3+} իոնների խառնուրդով) բյուրեղներով, Nd^{3+} իոնների խառնուրդով ապակու Պ. լ–ները: Կիրառում են տեխնոլոգ. շարժընթացներում (եռակցում, կտրում ևն), բժշկության մեջ, տեղորոշման և կապի ոլորտներում, օպտոէլեկտրոնիկայում:

ՊԻՆԴ–ՄԱՐՄՆԱՅԻՆ ՊԼԱԶՄԱ, պայման. ֆիզ. եզրույթ. բնորոշում է պինդ հաղորդիչներում շարժուն լիցքավորված մասնիկների (մետաղներում՝ էլեկտրոններ, կիսահաղորդիչներում՝ էլեկտրոններ և խոռոչներ) հատկությունների ամբողջությունը, որը նման է գազ. *պլազմայի* հատկություններին: Օր.՝ Պ. պ–ում կարող են հարուցվել նույն տեսակի տատանումներ ու ալիքներ, ինչպես գազ. պլազմայում:

ՊԻՆԴՈՍ, լ–ներ Բալկանյան թ–կղզու արմ–ում՝ Հունաստանում (հս. նախալեռները՝ Ալբանիայում): Երկ.՝ մոտ 200 *կմ*: Բարձր.՝ մինչև 2637 *մ* (Սմոլիկաս լ.): Կազմված է մի քանի լ–շղթաներից:

ՊԻՆԵԳԱ, գետ ՌԴ եվրոպ. մասի հս–ում: Հս. Դվինայի աջ վտակը: Երկ.՝ 779 *կմ*, ավազանը՝ 42,6 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 374 *մ*^{3}/*վ*: Ակունքից 658 *կմ* նավարկելի է: Ջրանցքով միացած է Կուլոյ գետին:

ՊԻՆԵԼ (Pinel) Ֆիլիպ (1745–1826), ֆրանսիացի բժիշկ–մարդասեր: Գիտ. հոգեբուժության հիմնադիրներից: Նրա ջանքերով հոգեկան հիվանդների խնամատարության գործում ներդրվել են հիվանդանոց. ռեժիմը, բժշկ. համայցերը, բուժարարողությունները ևն:

ՊԻՆԵՆՆԵՐ, ասեղնատերևների հոտով անզույն հեղուկներ են, $t_{եռ.}$՝ 15–160°C, խտ.՝ 0,86 *գ*/*սմ*^{3}: Պարունակվում են բևեկնայուղում (մինչև 90 %) և եթեր. յուղերում: Լաքերի և ներկերի լուծիչներ են, քսփուրի, տերպինեոլի, տերպինհիդրատի, միջատասպանների ստացման հումք:

ՊԻՆԿԵՎԻՉ Ալբերտ Պետրովիչ (1883/84–1939), ռուս. մանկավարժ: Պետրոգրադի մանկավարժ. ինստ–ի (1918) և Ուրալի համալսարանի (1920) հիմնադիրներից: 1924–ից՝ 2–րդ ՄՊՀ–ի ռեկտոր և պրոֆ.: Անհատի պաշտամունքի զոհ:

ՊԻՆՆԵՐ, երկփեղկանիների դասի փափկամարմինների սեռ: Խեցին սեպանման է, բարձր.՝ մինչև 90 *սմ*: Հայտնի է 5 տեսակ, հիմնականում՝ տաք ծովերում:

ՊԻՆՈՅԻՏՈՋ (< հուն. pino – խմել, տոգորվել և ...*գիտ*), բջիջների կողմից շրջակա միջավայրի հեղուկների կլանումը՝ նրանց մեջ պարունակվող նյութերի հետ միասին: Բջջի մեջ բարձրմոլ. միացությունների ներթափանցման հիմն. մեխանիզմներից է:

ՊԻՆՉԵՐՆԵՐ (< գերմ. Pinscher, անգլ.՝ pinch – պոկել, վերաբերում է շների պոչը և ականջները կարճացնելուն), շների ցեղերի (5, այդ թվում՝ դոբերմանը, նրբագեղմ Պ. ևն) խումբ: Բուծվել է Գերմանիայում: Հիմնականում կարճամազ են, չոր և ամուր մարմնակազմով, նրբագեղ: Օգտագործում են պահակության համար, որպես թիկնապահ և շուն–ընկերակից:

ՊԻՆՉ–ԷՖԵԿՏ (անգլ.՝ pinch – նեղացում, սեղմում), սեղմումը գազերում պարպման ժամանակ՝ պարպման հոսանքի և սեփ. կամ արտաքին մագնիս. դաշտի փոխազդեցության հետևանքով: Դիտվում է հոսանքի բավական մեծ ուժի դեպքում: Հոսանքի մագնիս. դաշտը պլազման սեղմում է պարպում. խցի պատերից՝ ստեղծելով պլազմայի մագնիսաջերմ. մեկուսացման պայմաններ: Օգտագործվում է ԿՋՄՍ–ի ուսումնասիրություններում:

ՊԻՆԱԿ, ք. Բելառուսում՝ Պինա գետի ափին՝ Պրիպյատ գետի միախառնման վայրում: Բն.՝ 130 հզ. (2010): Գետ. նվինգստ է: Ճարտ. հուշարձաններից են Ֆրանցիսկյան կոստյոլը (կաթոլիկ. տաճարը, XVI դ–ի սկիզբ), Բուտրիմովիչի պալատը (XVIII դ.) ևն:

ՊԻՆՍՈՆ (Pinzón), իսպանացի ծովագնաց եղբայրներ, 1. **Վիսենտե Յանես Պ.** (1460–մոտ 1524), Ք. Կոլումբոսի 1–ին արշավախմբի (1492–93) մասնակից: 1499–1500–ին իր ղեկավարած արշավախմբով հայտնաբերել է Բրազիլիայի հս. ափերի մեծ մասը, Ամազոնի ակունքը, Տոբակո կղզին, 1509–ին՝ Կամպեչե, Հոնդուրաս ծոցերը և Յուկատան թ–կղզին: 2. **Մարտին Ալոնսո Պ.** (1440–1493), Կոլումբոսի 1–ին արշավախմբի կազմակերպիչներից: «Պինտա» կարավելի (քառակայմ առագաստանավ) հրամ.:

ՊԻՆՏ (անգլ.՝ pint), ծավալի միավոր անգլ. չափման համակարգում: Մեծ Բրիտանիայում 1 *Պ* = 1/8 *գալոն* = 0,568261 *դմ*^{3}, ԱՄՆ–ում՝ հեղուկի 1*Պ* = 1/8 ամերիկ. գալոն կամ 0,473179 *դմ*^{3}, իսկ սորուն նյութերինը՝ 1/64 ամերիկ. *բուշել* կամ 0,550614 *դմ*^{3}:

ՊԻՈՄՈՆՏ (Piemonte), մարզ Իտալիայի հս–արմ–ում: Տարածքը՝ 25,4 *կմ*^{2}, բն.՝ 4,5 մլն (2013): Վարչ. կենտրոնը՝ Տուրին: Իտալիայի տնտեսապես առավել զարգա-

ցած շրջաններից է: Բրդե գործվածքների, արհեստ. մետաքսի, ցեմենտի արտադրյամբ 1-ինն է երկրում:

«ՊԻՈՆԵՐ» (Pioneer), ամերիկ. միջմոլորակ. ավտոմատ կայանների սերիա՝ Լուսնի, մոլորակների ու տիեզ. տարածության ուսումնասիրության համար և նրանց մշակման ու արձակման ծրագիրը: Առլգն զանգվածը՝ մոտ 260 *կգ*: 1958–78-ին արձակվել է 14 կայան: «Պ-10»-ը (1972) 1-ինն է անցել Յուպիտերի աստղակերպների գոտին, հասել 3-րդ տիեզ. արագության և դուրս եկել Արեգակն. համակարգից (1983): «Պ-11»-ը (1973) 1-ինն է շրջանցել Սատուռնը և դուրս եկել Արեգակն. համակարգից (1993):

«ՊԻՈՆԵՐ», մանկապատանեկան ամսագիր (1923–90, Երևան, 1990-ից՝ *«Աղբյուր»*):

«ՊԻՈՆԵՐ ԿԱՆՉ», մանկապատանեկան պարբերաթերթ (1925–90, Երևան, 1990-ից՝ *«Կանչ»*):

«ՊԻՈՆԵՐ ՂԵԿ», մանկապատանեկան հանդես (1925–34, Երևան): ՀԼԿԵՄ ԿԿ-ին առընթեր պիոներների կենտր. բյուրոյի հրտ-յուն:

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՃԱՄԲԱՐ, պիոներների և դպրոցականների (7–15 տարեկան) դաստիարակչ-առողջարար. հիմնարկ, խորհրդ. տարիներին (հիմնականում՝ քաղաքամերձ) կազմակերպել է երեխաների ամառ. և ձմեռ. հանգիստը: 1980-ական թթ-ին ՀԽՍՀ-ում գործել է շուրջ 1400 Պ. ճ.՝ մեծ մասը Հանքավանում և Ծաղկաձորում: Պ. ճ-ների զգալի մասը (ամառ. մանկ. ճամբարներ) շարունակում են իրենց գործունեությունը նաև հետխորհրդ. շրջանում:

ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՆԵՐ ԵՎ ՏՆԵՐ, արտադպրոց. հիմնարկներ խորհրդ. տարիներին միութ. հանրապետությունների լուսավորության նախ-յան համակարգում: Նպատակը երեխաների մեջ գիտ-յան նկատմամբ ստեղծագործ. ընդունակությունների զարգացմանը և մասնագիտ. կողմնորոշմանը նպաստելն էր: ՀԽՍՀ առաջին նմանատիպ հաստատությունը Երևանի Ղ. Ղուկասյանի անվ. դպրոցականների պալատն էր (հիմն.՝1937): 1982/83-ին գործել են 57 Պ. և դ. պ. և տ.: Հետխորհրդ. շրջանում դրանց հիմքի վրա ստեղծվել են ***հայորդաց տներ***, մանկապատանեկան մշակութ. և ստեղծագործ. կենտրոններ:

ՊԻՈՆՆԵՐ, տես *Պի-մեզոններ*:

ՊԻՈՍ II (Pius, աշխարհիկ անունը՝ Էնեա Սիլվիո Պիկկոլոմինի, Piccolomini, 1405–1464), Հռոմի պապ՝ 1458-ից: Հայտնի է որպես հումանիստ, բանաստեղծ: Պայքարել է պապ. իշխանության ուժեղացման համար, ընդլայնել է *Պապական մարզի* տարածքը:

ՊԻՈՍ VII (1742–1823), Հռոմի պապ՝ 1800-ից: Գլխավորել է Նապոլեոն I Բոնապարտի թագադրման արարողությունը (1804): Պապ. մարզի Ֆրանսիային վերամիավորումից (1809) հետո՝ մինչև 1814-ը, եղել է ֆրանս. գերության մեջ: 1814-ին վերականգնել է ճիզվիտների ուխտը (արգելվել էր 1773-ին):

ՊԻՈՍ IX (1792–1878), Հռոմի պապ՝ 1846-ից: *Պապական մարզում* իրականացրել է բարենորոգումներ, կազմել կառ-յուն լիբերալների մասնակցությամբ: Չի համաձայնել Պապ. մարզի վերացմանը (1870), որից ծագել է «հռոմեական հարցը»: 1854-ին հրատարակել է «Համառոտագիր» հայ ժողդ-ի վերաբերյալ, որտեղ Հայ եկեղեցուն ամբաստանել է «հերձվածողության» և «մոլորության» մեջ:

ՊԻՈՍ XI (1857–1939), Հռոմի պապ՝ 1922-ից: Զարգացրել է Հռոմ. կաթոլիկ. եկեղեցու սոցիալ. ուսմունքը՝ *Լևոն XIII*-ի պապի մշակած գաղափարների ոգով, դատապարտել է (1937) կոմունիզմի և նացիոնալ-սոցիալիզմի գաղափարախոսությունը:

ՊԻՈՍ XII (1876–1958), Հռոմի պապ՝ 1939-ից, կարդինալ (1929) և Սբ Աթոռի պետ. քարտուղար (1930-ից): ԵՀՊ-ի տարիներին դատապարտել է խաղաղ բնակչության ցեղասպանությունը, ինչպես նաև Արլ. Եվրոպայի երկրներում կոմ. կառույնների ստեղծումը, 1949-ին հայտարարել է նրանց հետ համագործակցող կաթոլիկներին եկեղեցուց վտարելու մասին:

ՊԻՈՏՐՈՎՍԿԻ Բորիս Բորիսովիչ (1908–1990), ռուս. հնագետ, արևելագետ, պատմաբան: ՀԽՍՀ (1968), ԽՍՀՄ (1970) ԳԱ-ների ակադ.: Սոց. աշխ. հերոս (1983): ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1964): Եղել է *Էրմիտաժի* տնօրեն (1964-ից): Աշխ-ները վերաբերում են Այսրկովկասի, Հին Արևելքի, Վանի թագավորության պատմությանը, մշակույթին և արվ-ին, հայ ժողդ-ի ծագման և Հայաստանի հնագույն պատմության հարցերին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946):

ՊԻՈՏՐՈՎՍԿԻ Միխայիլ Բորիսովիչ (ծ. 1944), ռուս պատմաբան-արևելագետ: ՌԳԱ ակադ. (2016, թղթ. անդամ՝ 1997-ից), ՌԴ Գեղարվ. ակադ-ի անդամ (2001): Բ. Բ. *Պիոտրովսկու* որդին (մայրը՝ Արփինե Ջանփոլադյանը, հնագետ էր): 1992-ից՝ Էրմիտաժի տնօրեն: Եղել է Հովսեփ Օրբելու ասպիրանտը: Հայոց ցեղասպանության տարելիցին գրել է «Դժբախտություն և հպարտություն» հոդվածը, որտեղ մասնավորապես ասված է. «Մենք կորցրել ենք տարածքներ, կորցրել ենք բազմաթիվ կյանքեր, բայց չենք կորցրել հայ ազգի յուրահատկությունները»: Աշխ-ները վերաբերում են Մերձ. Արևելքի և իսլամի պատմությանն ու հնագիտ-յանը: ՌԴ նախագահի (2003) և Պետ. (2016) մրց-ներ:

ՊԻՊԵՐԱԶԻՆ, անգույն բյուրեղ. նյութ է, $t_{հալ.}$՝ 112°C: Լուծվում է ջրում, սպիրտում, չի լուծվում եթերում: Օգտագործվում է վերլուծ. քիմիայում (Mo, V, W որոշելու համար) և բժշկության մեջ (հակաճիճային միջոց):

ՊԻՊԵՐԻԴԻՆ, հեքսահիդրոպիրիդին, պենտամեթիլենիմին, տարացիկլ. միացություն: Ամոնիակի ուժեղ հոտով, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 106,4°C: Ուժեղ հիմք է: Պ. մտնում է մի շարք ալկալոիդների կազմության մեջ, նրա ածանցյալներն օգտագործվում են որպես դեղորայքային պատրաստուկներ:

ՊԻՊԻՆ ԿԱՐՃԱՀԱՍԱԿ (Pippinus Brevis, 714–768), ֆրանկների թագավոր՝ 751-ից: Լինելով *մայորդոմ*՝ տապալել է (751) Մերովինգների հարստության վերջին թագավորին և հիմնադրել Կարոլինգների հարստությունը:

ՊԻՊԻՉ, տես *Ծվան*:

ՊԻՊՈՅԱՆ Սուրեն Վահանի (1922–2005), գեղանկարիչ: ՀԽՍՀ վաստ. նկարիչ (1972): Հեղինակ է դիմանկարների, բնանկարների, թեմատիկ կոմպոզիցիաների («Զինադիպ Ազիզյանի դիմանկարը», 1963, «Կոմիտաս: Վերադարձ», 1970, «1915 թվական: Գաղթ», 1983, «Ճայեր», 1997, «Տենչ», 1998, ևն):

ՊԻՍԱՐԵՎ Դմիտրի Իվանովիչ (1840–1868), ռուս հրապարակախոս, գրաքննադատ, փիլ.: 1862-ին ձերբակալվել է հակապետ. կոչ անող պամֆլետի համար: Կարևորել է բնագիտ. գիտելիքների դերը հաս-յան սոցիալ. զարգացման գործում: Զարգացրել է «բանական էգոիզմի» տեսությունը: Մանկավարժության մեջ մեծ նշանակություն է տվել աշխ. դաստիարակությանը: Հանդես է եկել «մաքուր արվեստի» տեսության դեմ: Ռուս. նիհիլիզմի հիմնադիրներից է: Հեղինակ է «Բազարով» (1862), «Ռեալիստները» (1864), «Գեղագիտության կործանումը» (1865), «Մտածող պրոլետարիատը» (1865), «Պուշկինը և Բելինսկին» (1865) և այլ աշխ-ների:

ՊԻՍԱՐԺԵՎՍԿԻ Լև Վլադիմիրովիչ (1874–1938), ռուս. քիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1930): Աշխ-ները վերաբերում են լուծույթներում կատարվող ռեակցիաների թերմոդինամիկային, էլեկտրոդ. շարժընթացների հավասարակշռության տեսությանը: Տվել է հետերոգեն կատալիզի էլեկտրոն. տեսության հիմունքները: Վ. Ի. Լենինի մրց. (1930):

ՊԻՍԱՐԻԴԵՍ, Պիսարիդիս (Pissarides), Քրիստոֆեր (ծ. 1948), բրիտանացի տնտեսագետ: Շեղումների որոնման հիման վրա մշակել է աշխատաշուկայի վերլուծության մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու տվյալ շուկայում պահանջարկի և առաջարկի հավասարակշռության հասնելու դժվարությունները, պարզաբանելու աշխատաշուկայի, գործազրկության և աշխատավարձի վրա կառ-յան տնտ. քաղ-յան ազդեցությունը: Նորելյան մրց. (2010, Պ. *Դայմոնդի*, Դ. *Մորթենսենի* հետ):

ՊԻՍԻՍՏՐԱՏՈՍ (Peisistratos), մ. թ. ա. VI դ-ի հույն գործիչ, Աթենքի տիրան՝ 560–527-ին (ընդհատումներով): Իրականացրել է վերափոխումներ (*ավպատրիդներից* խլված հողաբաժինները հանձնել է գյուղ. չքավորությանը, հատել է դրամ ևն): Ստեղծել է վարձու բանակ, ձեռնարկել հաս. շին-յուն (խոշոր ջրատար (գործել է մինչև XVIII դ.), Պիրեայի նավահանգստ-ը, տաճարներ ևն):

ՊԻՍԿԱՏՈՐ (Piscator) Էրվին (1893–1966), գերմանացի ռեժ.: Բեռլինի Քաղ. թատրոնի հիմնադիր, ղեկ. (1927–32): 1947-ից Մանհայմի, Մյունխենի և այլ ք-ների թատրոններում բեմադրել է հակաֆաշիստ. թեմաներով պիեսներ, 1962-ից ղեկավարել «Ֆոլկսբյունե» թատրոնը (Արմ. Բեռլին):

ՊԻՍՈՎԻՉ (Pisowicz) Անջեյ (ծ. 1940), լեհ հայագետ: Հեղինակ է «Հայերենի բաղաձայնական համակարգի զարգացումը» (ֆրանս., 1976), «Փարպիի բարբառը», «Երեք լեզվի քերականություն. գրաբար, արևելահայերեն և արևմտահայերեն» (երկուսն էլ՝ լեհ., 2001) աշխ-ների, համահեղ.՝ «Փոքր բառարան հայ-լեհերեն, լեհ-հայերենի» (2006): Լեհ. է թարգմանել Ա. Խաչատրյանի, Հ. Թումանյանի, Պ. Սևակի ստեղծագործություններից:

ՊԻՍՍԱՌՈ (Pissarro) Կամիլ (1830–1903), ֆրանսիացի գեղանկարիչ: Ստեղծել է պարզ կոմպոզիցիաներով, լուսավոր, մաքուր գույներով բնանկարներ («Հերկած հող», 1874), քաղաք. բնապատկերներ («Մինամարտր բուլվարը», 1897):

ՊԻՍՏՈԼԿՈՐՍ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (1896–1996), ռուս. ռադիոտեխնիկ: ՌԳԱ թղթ. անդամ (1946): Աշակել է

անտենաների մի քանի նոր տեսակներ: Լենինյան մրց. (1961):

ՊԻՎԱԶՅԱՆ Էմանուել Արզումանի (1920–1995), գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1989), պրոֆ. (1990): Հեղինակ է «Մխիթար Գոշ. Առակներ» (1951, գիտաքնն. բնագիր և ուսումնասիրություն), «Հովհաննես Թլկուրանցի. Տաղեր» (1960, գիտահամեմատ. բնագիր՝ ընդարձակ հետազոտությամբ), «Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» բանասիրական քննություն» (1987) աշխ–ների:

ՊԻՏԵՇՏԻ (Piteşti), ք. Ռումինիայի հվ–ում՝ Արճեշ ժուդեցի վարչ. կենտրոնը: Բն.՝ 173,5 հզ. (2010):

ՊԻՏԵՐՄԱՐԻՑԲՈՒՐԳ (Pitermaritzburg), ք. ՀԱՀ արլ–ում: Բն.՝ 617 հզ. (2009): Ունի համալսարան, բուսաբ. այգի, ազգ. թանգարան:

ՊԻՏԻՈՒՉՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ (Islas Pitiusas), Միջերկր. ծովի արլ. մասում՝ *Բալեարյան կղզիների* կազմում: Իսպանիայի տիրույթ է: Տարածքը՝ 760 *կմ*², բարձր.՝ 475 *մ* (Իվիսա կղզում): Ծածկված է միջերկրածով. թփուտներով: Զարգացած է ձկնաբուծությունը: Նվինգստ–ը՝ Իվիսա ք.:

ՊԻՏԿԵՌՆ (Pitcairn), հրաբխ. կղզի (բարձր.՝ մինչև 335 *մ*) Խաղաղ օվկ–ի հվ–արլ–ում՝ Պոլինեզիայում: Տարածքը՝ 4,5 *կմ*², բն.՝ 48 հզ. (2009): Անմարդաբնակ Օենո, Դյուսի և Հենդերսոն կղզիների հետ ներառված է Պիտկեռն կղզու բրիտ. տիրույթի կազմում (տարածքը՝ 47 *կմ*²): Վարչ. կենտրոնը՝ Ադամսթաուն (միակ բնակեցվածը Պ–ում):

ՊԻՏՍԲՈՒՐԳ (Pittsburgh), ք. ԱՄՆ Փենսիլվանիայի նահց–ում՝ Օհայո գետի ափին: Բն.՝ 305,7 հզ. (ագլոմերացիայում՝ 2,3 մլն, 2010): Տրանսպորտ. հանգույց է: Ունի օդանավակայան: Խոշոր առևտրաֆին. կենտրոն է: Տնտ–յան հիմն. ուղղություններից է բարձր տեխնոլոգիաների (ռոբոտատեխնիկա, միջուկ. էներգետիկա, կենսատեխնոլոգիա ևն) բնագավառը: Մերձակայքում արդյունահանում են ածուխ: Պ–ում է կառուցվել ԱՄՆ 1–ին ԱԷԿ–ը:

ՊԻՏՏԻ ՊԱԼԱՑՅՈ (Palazzo Pitti), գեղ. թանգարան (1828–ից, 1919–ից՝ պետ.) Ֆլորենցիայում: Հավաքածուն ընդգրկում է XV–XVII դդ–ի եվրոպ. գեղանկարչ. (Պալատինայի պատկերասրահ), արծաթե, ճենապակե գործեր, զգեստներ, կառքեր, ժամանակակից արվ–ի նմուշներ: Տեղավորված է պալատում. կենտր. մասը (XV դ–ի կես), բակը (1560–77, ճարտ. Բ. Ամմանատի) բացվում են դեպի Բորոլի այգիները (հիմն.՝ 1549–50):

ՊԻՏՈՒԻՏՐԻՆ (Pituitrinum), հորմոն. պատրաստուկ: Ստացվում է մորթած կենդանիների հիպոֆիզի հետին բլթից՝ ջր. լուծահան մեթոդով: Պարունակում է 2 հորմոն՝ *օքսիտոցին* և *վազոպրեսին*: Օգտագործում են ծննդաբերությունների ժամանակ արգանդի կծկումներն ուժեղացնելու, հետծննդյան արյունահոսությունը դադարեցնելու նպատակով, նաև գիշեր. անմիզապահության և անշաքար դիաբետի ժամանակ:

ՊԻՐ, **Պիրե, Բիր** (արաբ. աղբյուրներում՝ Էլ–Բիրե, ալ–Բիրատ), բերդավան Միջագետքում՝ Եփրատի ձախ ափին՝ հնագույն Զևգմա գետանցի մոտ: Միջնադարում եղել է հայերով բնակեցված միջազգ. առևտր. ուղիների հանգույց: XII դ–ում Պ–ի տեր է հիշվում Ապլղարիպ Պահլավունին: XVI դ–ում նվաճել է Օսմ. սուլթանությունը (թուրք. աղավաղմամբ կոչվել է Բիրենջիք): XX դ–ի սկզբին ունեցել է շուրջ 7 հզ. հայ բն., որոնք տեղահանվել ու կոտորվել են Մեծ եղեռնի ժամանակ:

ՊԻՐԱԳՐԻՏ, բարդ սուլֆիդների ենթադասի միներալ՝ Ag_3SbS_3: Մուգ գորշ բյուրեղներ են: Կարծր.՝ 2–2,5, խտ.՝ 5,8 *գ/սմ*³: Արծաթի հանքաքար է:

ՊԻՐԱՋՈԼ, անգույն բյուրեղ. նյութ է, $t_{հալ.}$՝ 70°C: Որոշ ածանցյալներ դեղանյութեր են (օր.՝ ամիդոպիրինը), ներկանյութեր և հերբիցիդներ:

ՊԻՐԱՄՈՎԻՉ Գժեգոժ Յակոբ (Գրիգոր Հակոբի, հոգևոր անունը՝ Վինցենտի, 1735–1801), հայազգի լեհագիր մանկավարժ, լուսավորիչ, թարգմանիչ, կաթոլիկ եկեղեցու գործիչ: Աստվածաբանության դ–ր (1766): Կրակովի բարձրագույն թագավոր. դպրոցի փիլ–յան պրոֆ. (1779), Հռոմի «Արկադիա» գր. ակադ–ի անդամ: Հեղինակ է «Ծխական դպրոցի ուսուցչի պարտականությունները» (1787), «Պերճախոսություն և արվեստ քերթության՝ ազգային դպրոցների համար» (1792), «Ծիսակարգերի գիտություն ժողովրդի համար» (հրտ.՝ 1802) աշխ–ների:

ՊԻՐԱՆԴԵԼԼՈ (Pirandello) Լուիջի (1867–1936), իտալացի գրող, դրամատուրգ: Հեղինակ է «Բերկրալի ցավ» (1889) բանաստեղծությունների, «Մեր առանց սիրո» (1894), «Տարվա նովելները» (1922) նովելների ժող–ների, «Վեց գործող անձինք հեղինակի որոնումներում» (1921), «Այսօր անում ենք հանպատրաստից» (1930) ողբերգակատակերգ. պիեսների, «Հանգուցյալ Մատտիա Պասկալը» (1904) վեպի: Հայ. հրատարակվել են «Մեռել է հյուրանոցում» (1963) պատմվածքների ժող–ը, «Ծերերն ու երիտասարդները» (1981) վեպը: Նոբելյան մրց. (1934):

ՊԻՐԱՆՅԱՆԵՐ, ծածանակերպների կարգի գիշատիչ ձկների ընտանիք: Մարմինը կողքերից սեղմված է, բարձր: Երկ.՝ մինչև 60 *սմ*: Հայտնի է ավելի քան 50 տեսակ՝ Հվ. Ամերիկայի քաղցրահամ ջրերում: Առավելապես հոտային գիշատիչներ են. հարձակվում են ձկների և այլ կենդանիների վրա, վտանգավոր են մարդու համար (սովոր. Պ–ի հոտը մի քանի *վ*–ում կարող է ոչնչացնել խոշոր կենդանու): Բուսակեր տեսակները մաքրում են ջրամբարները ջր. բուսականությունից: Մանր տեսակները պահում են աքվարիումներում, որտեղ նրանք կորցնում են իրենց ագրեսիվությունը:

ՊԻՐԵԱ, ք. Հունաստանում՝ Էգեյան ծովի ափին: Ներառված է Մեծ Աթենք ագլոմերացիայի կազմում: Բն.՝ 178,6 հզ. (2010): Երկրի գլխ. արտաքին առևտր. նվինգստ–ն է՝ Աթենք օդանավակայանով: Ունի ծով. թանգարան:

ՊԻՐԵՆԵՅԱՆ ԹԵՐԱԿՂԶԻ, Իբերյան թերակղզի, Եվրոպայի հվ–արմ–ում: Տարածքը՝ 584 հզ. *կմ*²: Ողողվում է Ատլանտ. օվկ–ի և նրա Բիսկայան ծոցի ու Ջիբրալթարի նեղուցի և Միջերկր. ծովի ջրերով: Ռելիեֆում գերակշռում են սարավանդները (Մեսետա ևն) և լ–ները (Պիրենեյան, Կանտաբրյան, Կատալոնյան, Անդալուզյան ևն): Բարձր.՝ 3482 *մ* (Մուլասեն լ.): Խոշոր գետերն են Տախոն, Գվադիանան, Դուերոն, Գվադալքվիվիրը: Պ. թ–ում են Իսպանիան, Պորտուգալիան, Անդորրան և Ջիբրալթարը:

ՊԻՐԵՆԵՅԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, տեկտ. փուլ: Տեղի է ունեցել էոզենի ու օլիգոցենի սահմանում: Ծալքավորման շարժընթացները ցայտուն արտահայտված են Ալպերում, Պիրենեյներում, Լիգուրիական Ապենիններում, Կովկասում, Տավրիդաներում, Դինարյան ժայռոտ լ–ներում:

ՊԻՐԵՆԵՅՆԵՐ (իսպ.՝ Pirinéos, ֆրանս.՝ Pyrénées), լեռն. համակարգ Եվրոպայի հվ–ում՝ Իսպանիայում, Ֆրանսիայում և Անդորրայում՝ Բիսկայան ծոցի և Միջերկր. ծովի միջև: Երկ.՝ 450 *կմ*, բարձր.՝ 3404 *մ* (Անեպո պիկ): Կլիման բարեխառն է, խոնավ, հվ–արլ–ում՝ մերձարևադարձ., միջերկրածով.: Կան բոքսիտների, երկաթի հանքավայրեր, ազգ. պարկեր, արգելոցներ:


ՊԻՐԵՎ Իվան Ալեքսանդրովիչ (1901–1968), ռուս. կինոռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1948): Նկարահանել է «Կուսակցական տոմս» (1936), «Ապուշը» (1958), «Կարամազով եղբայրներ» (1969), երաժշտ. կատակերգություններ՝ «Տրակտորիստներ» (1939), «Խոզապահուհին և հովիվը» (1941), «Կուբանի կազակները» (1950), նաև վավերագր. և այլ ֆիլմեր:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1942, 1943, 1946, 1948, 1951):

ՊԻՐԵՐԿԱ (Պիրյա) Անտոն Պետրովիչ (1905–1941), նենեց առաջին գրականագետը, գիտնականը: Մասնակցել է նենեց. գրերի ստեղծմանը: Հետազոտել է նենեց–ը և բանահյուսությունը: Կազմել է նենեց. դասագրքեր ազգ. դպրոցների համար: Հեղինակ է «Վեդոյի կրտսեր որդին» (1940, հրտ.՝ 1960) ինքնակենսագր. վիպակի, ռուս–նենեց. բառարանի: Զոհվել է ռազմաճակատում:

ՊԻՐԻ (Peary) Ռոբերտ Էդվին (1856–1920), ամերիկացի բևեռախույզ, ճանապարհորդ, ծովակալ (1911): 1892, 1895 և 1900–ին կտրել–անցել է Գրենլանդիան: 1909–ի ապրիլի 6–ին 4 ուղեկիցներով հնասահնակներով հասել է Հս. բևեռ:

ՊԻՐԻԴԻՆ, C_6H_5N տարացիկլ. միացություն, տհաճ հոտով անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 115,4°C: Պարունակվում է քարածխի խեժում: Կիրառվում է դեղանյութերի, հերբիցիդների սինթեզում, էթիլ սպիրտի բնափոխման համար, որպես լուծիչ: Պ–ի շատ ածանցյալներ կենսաբանորեն կարևոր միացություններ են, օր.՝ պիրիդոքսինը, նիկոտինը, նիկոտինաթթուն:



ՊԻՐԻԴՈՔՍԱԼԱՅԻՆ ՖԵՐՄԵՆՏՆԵՐ, ֆերմենտներ, որոնց ոչ սպիտակուց. մասը (պրոսթետիկ խումբ) պիրիդոքսալֆոսֆատն է: Կատալիզում են ամինաթթվային փոխանակությունն օրգանիզմում: Պ. ֆ–ի գործունեությունն առաջինը բացահայտել են կենսաքիմիկոսներ Ա. Ե. *Բրաունշտեյնը* և Մ. Գ. Կրիցմանը:

ՊԻՐԻԴՈՔՍԻՆ, B_6 **վիտամին**, ջրալույծ վիտամին, *պիրիդինի* ածանցյալ: Հյուսվածքներում վերածվում է պիրիդոքսալֆոսֆատ կոֆերմենտի, որը մասնակցում է գլխավորապես ամինաթթուների սինթեզման և ճեղքման ռեակցիաներին: Պարունակվում է մսի, ձկան, կաթի, լյարդի, խմորիչների և բուս. շատ մթերքների մեջ: Պ–ի անբավարարությունն օրգանիզմում առաջացնում է մաշկաբորբեր, ջղաձգումներ, սակավարյունություն:

ՊԻՐԻՄԻԴԻՆ, **1,3 – դիազին**, տարացիկլ. միացություն: Անգույն բյուրեղներ են: Լավ լուծվում են ջրում, սպիրտում, եթերում, $t_{հալ.}$՝ 22,5°C: Թույլ միաթթու հիմք

է: Պ. և նրա ածանցյալները մտնում են նուկլեինաթթուների (տես *Պիրիմիդինային հիմքեր*), թիամինի, բարբամիլի ևնի բաղադրությունների մեջ:




ՊԻՐԻՄԻԴԻՆԱՅԻՆ ՀԻՄՔԵՐ, պիրիմիդիններ, բնական միացությունների խումբ, պիրիմիդինի ածանցյալները: Մտնում են նուկլեինաթթուների կազմի մեջ: Պ. հ. են ցիտոզինը, ուրացիլը, թիմինը ևն: Պ. հ-ի քանակը ԴՆԹ-ում հավասար է, իսկ ՌՆԹ-ում՝ քիչ պակաս պուրինային հիմքերից (Չարգաֆի կանոններ): Օրգանիզմների կենսագործունեության մեջ Պ. հ-ի կենսբ. դերը պայմանավորված է նուկլեինաթթուների, կոֆերմենտների և այլ կենսաբանորեն ակտիվ միացությունների կառուցմանը նրանց մասնակցությամբ:

ՊԻՐԻՏ, երկաթային կոլչեդան, սուլֆիդների դասի առավել տարածված միներալը՝ FeS_2՝ Cu, Ru, Fe, Ni, CO և այլ խառնուրդներով: Արույրադեղին խորհնարդ. բյուրեղներ են, հոծ հատիկավոր զանգվածներ: Կարծր.՝ 6,5, խտ.՝ 5,0 *գ/սմ*^{3}: Ծծմբի, ծծմբական թթվի և երկաթի արջասպի հումք է: Հանքավայրեր կան նաև ՀՀ Լոռու և Սյունիքի մարզերում:

ՊԻՐԿԵ (Pirquet) Կլեմենս (1874–1929), ավստրիացի մանկաբույժ: Առաջարկել է (1907) տուբերկուլոզի ախտորոշման փորձ (Պ-ի ռեակցիա):


ՊԻՐՈԳԱԼՈԼ, պիրոգալաթթու, 1, 2, 3- եռհիդրօքսի բենզոլ, անգույն, օդում արագ մգացող բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 133°C: Կիրառվում է ներկանյութերի արտադր-յան մեջ, գազ. վերլուծության մեջ՝ թթվածինը կլանելու համար, որպես հայտածիչ՝ լուսանկարչության մեջ:



ՊԻՐՈԳՈՎ Նիկոլայ Իվանովիչ (1810–1881), ռուս վիրաբույժ և անատոմ, մանկավարժ: Ռազմադաշտ. վիրաբուժության և վիրաբուժության մեջ անատոմա-փորձարար. ուղղության հիմնադիրը: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1846): Սևաստոպոլի պաշտպ-յան (1854–55), Ֆրանս–պրուս. (1870–71) և Ռուս–թուրք. (1877–78) պատերազմների մասնակից: Առաջինն է ռազմադաշտում կատարել (1847) վիրահատություն՝ ընդհ. անզգայացմամբ (նարկոզ), ներդրել անշարժացնող գիպսե վիրակապը: Պայքարել է կրթության բնագավառում ավանդ. նախապաշարմունքների դեմ, հանդես է եկել համալսարանների ինքնավարության օգտին: Համընդհ. ճանաչում ունի Պ-ի «Տեղագրական անատոմիա» (հ. 1–4, 1851–54) ատլասը:

ՊԻՐՈԹԵՐԱՊԻԱ (< հուն. pir – կրակ և *թերապիա*), սիֆիլիսի, բրուցելոզի և այլ հիվանդությունների բուժման նպատակով մարմնի ջերմաստիճանը կտրուկ բարձրացնող ազդակների (օտարածին սպիտակուցներ, վակցինաներ, պիրոգենալ ևն) ներարկումն օրգանիզմ:

ՊԻՐՈԼ, C_4H_5N տարացիկլ. միացություն, բենզոլի էլեկտրոն. նմանակն է, ունի թույլ արտահայտված արոմատիկ բնույթ: Պ. անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 130°C: Պարունակվում է քարածխի խեժում: Պ-ի միջուկը պորֆիրինների հիմն. կառուցվածք. բաղադրիչն է: Պ-ի ածանցյալներ են հեմինը, քլորոֆիլը, բազմաթիվ ալկալոիդներ (նիկոտին, ատրոպին, կոկաին ևն), ամինաթթուներ (պրոլին, տրիպտոֆան ևն):




ՊԻՐՈԼԻԶ (< հուն. pyr – կրակ և ... *լիզ*), 1. բարձր ջերմաստիճաններում օրգ. միացությունների քայքայմամբ ուղեկցվող փոխարկումները: Նավթաքիմ. սինթեզի կարևոր արտադր. եղանակ է, որի հիմն. նպատակը պլաստմասսաներ, սինթետիկ մանրաթելեր, կաուչուկի և այլ կարևոր նյութերի արտադր-յան համար անհրաժեշտ հումք՝ չհագեցած ածխաջրածիններով հարուստ գազեր ստանալն է: 2. **Փայտի Պ.**, փայտի չոր թորում, փայտանյութի քայքայումն առանց օդի մուտքի մինչև 450°C տաքացնելիս: Կիրառվում է փայտածուխ, մեթան, քացախաթթու, մեթիլ սպիրտ, ացետոն ևն ստանալու համար: 3. **Նավթահումքի Պ.**, նավթի և նրա բաղադրիչների քայքայումն է 650–700°C–ից բարձր ջերմաստիճանում: Կիրառվում է հիմնականում ոչ սահման. և արոմատիկ ածխաջրածիններ ստանալու համար:

ՊԻՐՈԼՅՈՒԶԻՏ, օքսիդների դասի միներալ՝ MnO_2: Հաճախ պարունակում է մինչև մի քանի տոկոս ջուր: Մուգ, հոծ, հողանման զանգվածներ են, օոլիթներ: Կարծր.՝ 2–6, խտ.՝ 4,7–5,2 *գ/սմ*^{3}: Մանգանի կարևոր հանքանյութ է: Մաքուր Պ. օգտագործում են գալվան. տարրերի, քիմ. պատրաստուկների, հախճապակու և այլ արտադր-ներում:

ՊԻՐՈԼՆԵՐ (Oriolidae), ճնճղուկանմանների կարգի թռչունների ընտանիք: Տարածված է Եվրոպայի, Արմ. Ասիայի և Հս–արլ. Աֆրիկայի անտառներում: ՀՀ-ում հայտնի է 1 տեսակ՝ պիրոլը: Մարմնի երկ.՝ 24, թևերի բացվածքը՝ 44–47 *սմ*, կ. զ.՝ 70–85 *գ*: Նրբակազմ թռչուն է: Ձայնը նման է կատվի մլավոցի, երգը յուրօրինակ սրնգային ելևէջներով է: Գունագեղ դեղինի, նուրբ կանաչի, սևի համադրությամբ փետրավորման շնորհիվ հեշտ ճանաչելի է և որոշակի գեղագիտ. արժեք ունի: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:


ՊԻՐՈՒԽԱՂՈՂԱԹԹՈՒ, α–կետոպրոպիոնաթթու, $CH_3C(O)COOH$, սուր հոտով անգույն հեղուկ է: Պարունակվում է բոլոր օրգանիզմների բջիջներում, ճարպերի, ածխաջրերի և սպիտակուցների փոխանակության կարևորագույն միջանկյալ նյութ է: Նյութափոխանակության որոշ խանգարումների (օր.՝ B_1 ավիտամինոզի) դեպքում Պ-ի քանակն օրգանիզմում ավելանում է:

ՊԻՐՈԿԱՏԵԽԻՆ, 1, 2–երկհիդրօքսիբենզոլ, երկատոմ ֆենոլ: Անգույն, օդում արագ մգացող բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 105°C: Ներկանյութեր, ադրենալին, պոլիմեր. նյութերի կայունարարներ ստանալու հումք է, հայտածիչ՝ լուսանկարչության մեջ:



ՊԻՐՈՄԱՆԻԱ (< հուն. pyr – կրակ և *...մանիա*), հրկիզումների նկատմամբ անհաղթահարելի, իմպուլսիվ առաջացող հիվանդագին մղում:

ՊԻՐՈՄԵԼԻՏԱԹԹՈՒ, բենզոլ – 1,2,4,5 – քառակարբոնաթթու, անգույն բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 281°C: Պ. և նրա անհիդրիդը կիրառվում են ջերմակայուն պոլիմերների՝ պոլիպիրոմելիտիմիդների արտադր-յան մեջ:



ՊԻՐՈՊ, հրակն, նռնաքարերի դասի միներալ՝ $MgAl_2[SiO_4]_3$: Կարմիր հոծ բյուրեղներ են: Ալմաստի ուղեկից է: Թափանցիկ Պ-ները թանկարժեք քարեր են:

ՊԻՐՈՊԼԱԶՄԻԴՆԵՐ, նախակենդանիների կարգ (ըստ այլ համակարգի՝ դաս): Մի շարք Պ. մակաբուծում են եղջերավոր կենդանիների, ձիերի, խոզերի, շների էրիթրոցիտներում՝ առաջացնելով պիրոպլազմիդոզներ: Փոխանցողները տզերն են:

ՊԻՐՈՖԻՏԱՅԻՆ ՋՐԻՄՈՒՌՆԵՐ, ջրիմուռների բաժին: Միաբջիջ գաղութ. օրգանիզմներ են: Բազմանում են հիմնականում կիսումով և սպորներով: Հայտնի է մոտ 100 տեսակ (130 ցեղ)՝ քաղցրահամ ջրերում և ծովերում: Առաջացնում են ջրերի «ծաղկում»:

ՊԻՐՈՖՈՐԱՅԻՆ ՄԵՏԱՂՆԵՐ (< հուն. pyr – կրակ և phoros – կրող), մետաղներ, որոնք նուրբ մանրացրած վիճակում կարող են օդում բոցավառվել: Պիրոֆորային վիճակում ստացվել են Fe, Al, Mg, Co, Ni, Cr, Mn, Ti, V և այլ մետաղներ: Պիրոֆորային են կոչվում նաև շփման և թեթև հարվածի դեպքում կայծարձակող մետաղները, համաձուլվածքները:

ՊԻՐՈՔՍԵՆՆԵՐ, շղթ. սիլիկատների ենթադասի միներալների խումբ՝ $M'M[Si_2O_6]$, որտեղ M'-ը՝ Li, Na, Ca, Mg, Fe, իսկ M-ը՝ Al, Ti, Cr և այլ տարրեր են: Տարբերում են հողալկալ. (դիոպսիդ–գեղենբերգիտ, ավգիտ) և ալկալ. (էգիրին, ժադեիտ, սպոդումեն) Պ.: Հիմք. և գերհիմք. լեռն. ապարների ապարակազմող գլխ. միներալներն են:

ՊԻՐՈՔՍԻԼԻՆ (< հուն. pyr – կրակ և xilon – ծառ), եռնիտրաթաղանթանյութ, պայթուցիկ նյութ է: Ստանում են *թաղանթանյութի* նիտրացմամբ: Կիրառվում է անծուխ վառոդի արտադր-յան մեջ: Եռնիտրաթաղանթանյութի 4–%-անոց լուծույթն էթանոլի և երկէթիլեթերի խառնուրդի հետ 1 : 7 հարաբերությամբ կիրառվում է բժշկության և քիմ. արդ-յան մեջ:

ՊԻՅՈՒՆԴԱ, ք. Աբխազիայում և համանուն հրվանդան Կովկասի սևծով. ափերին: Պ-ում կան մնացուկ. սոճու արգելավայրեր և արգելոց: Պ-ի տեղում մ. թ. ա. եղել է հույների հիմնադրած Պիտիունտ ք-ևմինգատ-ը: Պահպանվել են բերդի պատերի, բնակելի կառույցների, բյուզ. բազիլիկի մնացորդներ, հին բնակատեղիից հս–արլ.՝ X դ-ի տաճար (որմնանկարները՝ XIV–XVI դդ.):

ՊԼԱԳԻՈԿԼԱԶՆԵՐ, ապար առաջացնող միներալներ, *դաշտային սպաթներ*: Ալբիտի և անորթիտի անընդհատ իզոմորֆ շարքից են: Պ-ի կազմն արտահայտում են համապատասխանաբար՝ ըստ նրանում անորթիտի տոկոս. պարունակության: Կրկնադարյուրեղների եռյակի տեսության զարգացման գործում զգալի ներդրում ունի Լևոն *Վարդանյանցը*:

ՊԼԱԶՄԱ, (հուն.՝ plasma – ծեփված, ձևավորված), իոնացված գազ, որում դրական և բացաս. լիցքավորված մասնիկների կոնցենտրացիաները հավասար են (քվազիչեզոքություն): Պ-ի վիճակում է Տիեզերքի նյութի՝ աստղերի, գալակտիկաների, միգամածությունների, միջաստղ. միջավայրի մեծ մասը: Երկրագնդի մերձակայքում գոյություն ունեն արեգակն. քամու, մագնիսոլորտի և իոնոլորտի ձևով: Բարձրջերմաստիճան. Պ. ($T = 10^6 – 10^8$ K) կազմված է *դեյտերիումից* և *տրիտիումից*, ուսումնասիրվում է ԿԶՄՍ իրականացնելու համար, ցածրջերմաստիճան. Պ.

($T \le 10^5$ K) օգտագործում են տարատեսակ գազապարպում. սարքերում, ՄՀՌ գեներատորներում, պլազմատրոններում, պլազմ. շարժիչներում, ինչպես նաև տեխնիկայում (պլազմ. մետաղագործություն, պլազմ. տեխնոլոգիա ևն):

ՊԼԱԶՄԱ ԱՐՅԱՆ, արյան հեղուկ մասը: Բաղադրիչներն են արյան ձևավոր տարրերը՝ էրիթրոցիտներ, լեյկոցիտներ, թրոմբոցիտներ, որոնց փոփոխությունները ունեն ախտորոշիչ նշանակություն տարբեր հիվանդությունների (օր.՝ ռևմատիզմի, շաքարախտի ևն) ժամանակ: Պ. ա–ից պատրաստում են դեղապատրաստուկներ (ալբումին, ֆիբրինոգեն, գամմա–գլոբուլիններ ևն):

ՊԼԱԶՄԱՅԱԿԱՆ ԲՋԻՋՆԵՐ, իմուն. համակարգի բջիջներ, B–լիմֆոցիտների տարբերակման վերջին փուլը, որոնց հիմն. գործառույթը մասնագիտացված հակամարմնի սինթեզն է: Մասնակցում են օրգանիզմի պաշտպ. հակազդեցություններին: Տեղադրվում են հիմնականում ոսկրածուծում և լիմֆոիդ. հյուսվածքում:

ՊԼԱԶՄԱՅԱԿԱՆ ԹԱՂԱՆԹ, *բջջաթաղանթ, պլազմալեմա*, կենսբ. թաղանթ, որը շրջապատում է բուս. և կենդ. բջիջների պրոտոպլազման: Մասնակցում է բջջի և նրան շրջապատող նյութերի փոխանակության կարգավորմանը:

ՊԼԱԶՄԱՅԻ ՔԻՄԻԱ, ֆիզքիմիայի բաժին. ուսումնասիրում է ցածրջերմաստիճան. (10^3–10^5 K) պլազմայում ընթացող քիմ. և ֆիզքիմ. շարժընթացները և պլազմաքիմ. տեխնոլոգիայի հիմունքները: Սովոր. պայմաններում ընթացող քիմ. շարժընթացներից տարբերվում են նրանով, որ պլազմայում առաջանում են նշանակալիորեն մեծ քանակությամբ ռեակցիոնունակ մասնիկներ՝ գրգռված մոլեր, էլեկտրոններ, ատոմներ, ատոմ. և մոլ. իոններ, ազատ ռադիկալներ (որոնցից մի քանիսը կարող են առաջանալ միայն պլազմայում), որոնք պայմանավորում են քիմ. ռեակցիաների նոր տիպերը:

ՊԼԱԶՄԱՅԻ ՖԻԶԻԿԱ, ֆիզիկայի բաժին. ուսումնասիրում է պլազմայի հատկությունները ու վարքը՝ հատկապես մագնիս. դաշտում: Խիտ Պ. ֆ–ի համար ճիշտ է այն պնդումը, որ այն կարելի է դիտարկել որպես հոծ միջավայրի ֆիզիկայի ենթաբաժին, որովհետև խիտ պլազմայի ուսումնասիրությունը հանգեցվում է լրիվ կամ մասամբ իոնացված հոծ միջավայրի մակրոսկոպիկ վարքի հետազոտությանը: Բայց նոսրացված պլազման միշտ չէ համարժեքորեն նկարագրվում հոծ միջավայրերի մեխանիկայի մեթոդներով:

ՊԼԱԶՄԱՅԻՆ ԱՐԱԳԱՑՈՒՑԻՉՆԵՐ, լիցքավորված մասնիկների՝ միջին թվով էլեկտրաչեզոք հոսքերի արագացման սարք. իոնների կինետիկ էներգիան հասցնում է 10 *էՎ*–ից մինչև 10 *ՄէՎ*:

ՊԼԱԶՄԱՅԻՆ ԳԵՆԵՐԱՏՈՐ, նույնն է, ինչ *պլազմատրոն*:

ՊԼԱԶՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ, *պլազմայի ֆիզիկայի* բաժին. ուսումնասիրում է լիցքավորված մասնիկների փնջերի կոլեկտիվ փոխազդեցությունները պլազմայի հետ և դրանց էֆեկտների օգտագործումը: Պ. է. լուծում է հաճախությունների լայն ընդգրկույթում շաղկապված (կոհերենտ) մագնիս. ճառագայթման ստացման խնդիրները, որոնք հեշտությամբ վերադասավորվում են պլազմայի խտությունը փոխելիս: Պլազմ. համակարգերում, ի տարբերություն վակուումի, կարելի է ստանալ բարձր հոսանքներ և հզոր իոն. փնջեր, որը հեռանկարային է իոն. ջերմամիջուկ. սինթեզի համար:

ՊԼԱԶՄԱՅԻՆ ՀԱՇՄԱԽՈՒԹՅՈՒՆ, տարած. լիցքի երկայն. (լենգմյուրյան) տատանումների հաճախությունը պլազմայում.

$$\omega = \sqrt{\frac{4\pi ne^2}{m}},$$

որտեղ e–ն մասնիկի (էլեկտրոնի կամ իոնի) էլ. լիցքն է, m–ը՝ նրա զանգվածը, n–ը՝ մասնիկների կոնցենտրացիան:

ՊԼԱԶՄԱՅԻՆ ՀՐԹԻՌԱՅԻՆ ՇԱՐԺԻՉ, նույնն է, ինչ *էլեկտրամագնիսական հրթիռային շարժիչը*:

ՊԼԱԶՄԱՅԻՆ ՌԵԱԿՏՈՐ, պլազմաքիմ. կամ պլազմ. մետաղագործ. ագրեգատի հանգույց, որում իրականացվում են ջերմա– և զանգվածափոխանակությունը և ցածրջերմաստիճան. պլազմայի մասնակցությամբ ընթացող քիմ. ռեակցիաները:

ՊԼԱԶՄԱՅԻՆ ՎԱՌԱՐԱՆ, էլ. վառարան՝ մետաղների ու համաձուլվածքների տաքացման, հալման ու վերամշակման համար, որտեղ որպես ջերմության աղբյուր օգտագործվում է պլազմատրոնով ստացվող *պլազման*:

ՊԼԱԶՄԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ, տեխնոլոգ. շարժընթացներ, որոնցում օգտագործվում են պլազմատրոնով ստացված ցածրջերմաստիճան. *պլազմաներ*՝ մետաղ. նյութերի կտրման, եռակցման, մակահալման նպ. համար: Լայնորեն կիրառվում է մեխ. մշակման զուգակցմամբ՝ բարձրամուր, դժվար մշակելի նյութերից դետալներ պատրաստելու համար:

ՊԼԱԶՄԱՏՐՈՆ, պլազմ. գեներատոր, գազալիցքաթափումային սարք՝ ցածրջերմաստիճան. *պլազմա* ($T \approx 10^4$ K ջերմաստիճանով) ստանալու համար: Տարածված են ԲՀ և աղեղ. Պ–ները: ԲՀ Պ–ում (հզոր.՝ մինչև 1 *ՄՎտ*) պլազմաառաջացնող նյութը տաքացվում է պարպում. խցում (սովորաբար՝ մրրկային հոսանքով), աղեղ. Պ–ում (հզոր.՝ 100 *Վտ*–10 *ՄՎտ*)՝ էներգիայի բարձր կոնցենտրացիայով սեղմված էլ. աղեղով անցնելով: Օգտագործվում է հիմնականում տեխնոլոգ. նպատակներով (պլազմ. մետաղագործություն, պլազմայի քիմիա ևն):

ՊԼԱԶՄԱՕՊՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, համակարգեր, որտեղ լիցքավորված մասնիկների էլեկտրոն. փնջերի կիզակետման համար օգտագործվում են ոչ թե արտաքին մագնիս. ու էլ. դաշտերը, ինչպես իոն. ու էլեկտրոն. օպտիկայում, այլ պլազմայի մագնիս. և էլ. դաշտերը: Պ. հ–ի օրինակ են ծավալ. լիցքով պլազմ. ոսպնյակը, պլազմ. արագացուցիչները ևն:

ՊԼԱԶՄԻԴԵՆԵՐ, ժառանգականության գործոններ՝ տեղակայված քրոմոսոմներից դուրս բջիջներում: ԴՆԹ–ի մոլ–ներ են, որոնք ունակ են ինքնաբազմացման: Առավել ուսումնասիրված են բակտերիային Պ. (կոլիցինոգեն, սեռ. գործոնները, դեղորայք. կայունության գործոնները): Լայնորեն օգտագործում են գենային ճարտարագիտ–յան մեջ՝ որպես գենետիկ. նյութերի փոխանցողներ:

ՊԼԱԶՄԻՆ, *ֆիբրինոլիզին*, ֆերմենտ, որ կատալիզում է պեպտիդների և արգինինի ու լիզինի էսթերների ճեղքումը: Ֆիբրինը փոխակերպում է լուծելի նյութերի՝ նպաստելով թրոմբի ներծծմանը:

ՊԼԱԶՄՈԳԵՆՆԵՐ, *քլորապլաստներ*, միտոքոնդրիաների և բջջի արտաբջջ. այլ տարրերի ԴՆԹ–ում տեղակայված գեներ: Ժառանգվում են ոչ Մենդելի օրենքների համաձայն:

ՊԼԱԶՄՈԴԵՄՈՆԵՐ (< *պլազմա* և հուն.՝ desmos – կապ), բջջապլազմ. թելեր, որոնք միացնում են հարևան բուս. բջիջների պրոտոպլաստները:

ՊԼԱԶՄՈԴԻՈՒՄ, լորձասնկերի (միքսոմիցետներ) վեգետատիվ մարմինը՝ թաղանթազուրկ բազմակորիզ բջջապլազմ. զանգվածի տեսքով, որը ունակ է ամեոբանման շարժումների:

ՊԼԱԶՄՈԴԻՈՒՄՆԵՐ, հեմոսպորիդիումների ենթակարգի նախակենդանիների սեռ: Հայտնի է ավելի քան 60 տեսակ: Մակաբուծվում են մարդու և ողնաշարավոր կենդանիների էրիթրոցիտներում և էնդոթելի բջիջներում: Տեսակներից 4–ը մարդու մալարիայի հարուցիչներ են, փոխանցվում են *մալարիային մոծակների* միջոցով:

ՊԼԱԶՄՈԼԻԶ (կենսբ.), պրոտոպլաստի անջատումը բջջաթաղանթից՝ բջջի վրա հիպերտոնիկ լուծույթի ազդեցությամբ: Պ. բնորոշ է հիմնականում բույսերի բջիջներին, որոնք ունեն ամուր, թաղանթանյութից կազմված (ցելյուլոզային) թաղանթ: Կենդանիների բջիջները հիպերտոնիկ լուծույթում կնճռոտվում են:

ՊԼԱԶՄՈՖԵՐԵԶ (< *պլազմա* և հուն.՝ apharesis – հեռացում), քրոնիկ. վարակի, թունավորումների, ալերգիաների, ինքնաիմուն. հիվանդությունների բուժման մեթոդ: Օրգանիզմից արյան՝ թույներ պարունակող պլազմայի մի մասի, իմուն. կոմպլեքսների, ախտաբան. սպիտակուցների, ճարպերի, հակածինների հեռացման և օրգանիզմ վերադարձման գործողություն է: Նվազեցնում է արյան մածուցիկությունը, լավացնում միկրոշրջանառությունը:

ՊԼԱԿԱՏ (գերմ.՝ Plakat, ֆրանս.՝ placard – հայտարարություն, ազդագիր), 1. *գրաֆիկայի* տեսակ: 2. Արվ–ի ստեղծագործություն (պատկեր) մեծ թղթի վրա՝ հակիրճ բացատր. տեքստով: Օգտագործվում է գովազդ., տեղեկատվ., ուսուցող., քարոզչ. և այլ նպատակներով: Հայկ. Պ–ի առաջին նմուշները ևս եղել են ազդագր. (*Արամյան թատրոնի* հյուրախաղերի Պ., 1849): 1920–ական թթ–ից ուշագրավ Պ–ներ են ստեղծել Կ. Հալաբյանը, Հ. Կոջոյանը, Ա. Չիլինգարյանը, Ա. Սալյանը, Ս. Արուտյանը, Է. Սեդրակյանը, Լ. Կարսյանը և ուր.: Արդի շրջանում ՀՀ–ում զարգացել է գովազդ. արդ. գրաֆիկան:

ՊԼԱԿՄԻՆ Բգոր Նիկոլաևիչ (1900–1967), մետաղագործության և լեռնագործության բնագավառի ռուս. գիտնական: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1946): Աշխ–ները վերաբերում են հիդրոմետաղագործությանը, հանք. հանածոների հարստացման հարցերին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1951, 1952):

ՊԼԱՆ (տնտ.), տնտեսվարող սուբյեկտների, կառավարման համակարգի առանձին օղակների գործունեության ծրագիր: Բնորոշ էր խորհրդ. տնտեսվարությունը:

ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ, տնտ. և սոցիալ. զարգացման պլանների, ինչպես նաև դրանց կատարման գործնական միջոցառումների համալիր: Միկրոտնտ. մակարդակում հանդես է գալիս որպես ներարտադր. (ներֆիրմային) Պ., մակրոտնտ. մակարդակում՝ հասարակության կառավարման համակարգի կարևոր տարր և պետության

սոցիալ–տնտ. քաղ–յան իրականացման միջոց:

ՊԼԱՆԱՐԻԱՆԵՐ (Planarian), թարթիչավոր որդերի կարգ: Երկ.՝ մինչև 60 (սովորաբար՝ մինչև 35) *սմ*: Ազատ ապրող օրգանիզմներ են: Հանդիպում են քացրահաս ջրերում, հազվադեպ՝ ծովերում և հողում (արևադարձներում): Լաբորատոր կենդանիներ են (կարող են առաջացնել նախակենդանիների պայման. ռեֆլեքսներ):

ՊԼԱՆԵՐ (ֆրանս.՝ planeur, < plane – սավառնել), տես *Սավառնակ*:

ՊԼԱՆԵՐԱՅԻՆ ՍՊՈՐՏ, սավառնակային սպորտ, ավիացիոն սպորտի տեսակ. թռիչքներ սավառնակներով՝ արագընթաց եռանկյուն երթուղիներով, խնդիրը՝ նպատակակետին հասնելն ու վերադառնալն է՝ որոշակի հեռ–յան վայրէջքով: 1–ին միջազգ. մրցումներն անցկացվել են 1925–ին, աշխարհի առաջնությունները՝ 1948–ին:

ՊԼԱՆԿ (Planck) Մաքս (1858–1947), գերմանացի ֆիզիկոս, քվանտ. տեսության հիմնադիրներից: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. (1913), ԽՍՀՄ ԳԱ պատվ. (1926) անդամ: Գործածության մեջ է դրել (1900) **գործողության քվանտ** (Պ–ի հաստատուն) հասկացությունը և, ելնելով քվանտների գաղափարից, սահմանել է հետագայում իր անունով կոչված ճառագայթման օրենք: Աշխ–ները վերաբերում են թերմոդինամիկային, հարաբերականության տեսությանը, բնագիտ–յան փիլ–յանը: Նոբելյան մրց. (1918):

ՊԼԱՆԿԻ ՀԱՍՏԱՏՈՒՆ, գործողության քվանտ, քվանտ. տեսության հիմն. հաստատունը՝ $h \approx 6{,}626 \cdot 10^{-34}$ *Ջվ*: Հաճախ օգտագործվում է $\hbar = h/2\pi \approx 1{,}0546 \cdot 10^{-34}$ *Ջվ*, որը նույնպես կոչվում է Պ. հ.:

ՊԼԱՆԿԻ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ՕՐԵՆՔ, Պլանկի բաշխում, ջերմ. ճառագայթման հիմն. օրենքներից, որով որոշվում է էներգիայի բաշխումը բացարձակ սև մարմնի (հավասարակշիռ ջերմ. ճառագայթման) սպեկտրում: Սահմանել է Մ. *Պլանկը* 1900–ին:

ՊԼԱՆԿՏՈՆ (հուն.՝ planctonos – թափառող), ջրի հաստության մեջ ապրող օրգանիզմների ամբողջություն, որոնք ընդունակ չեն դիմակայելու ջրի հոսանքով տեղափոխմանը: Պ. են կազմում մի շարք բակտերիաներ, դիատոմային և որոշ այլ ջրիմուռներ (բուսապլանկտոն), նախակենդանիներ, որոշ աղեխորշավորներ, փափկամարմիններ, խեցգետնակերպներ, ձկների ձվեր ու թրթուրներ, բազմաթիվ անողնաշարների թրթուրներ (կենդանապլանկտոն): Պ. անուղղակի–րեն կամ սննդ. շղթաների օղակներով կեր են ծառայում ջրամբարներում ապրող կենդանիների համար:

ՊԼԱՆՏԱՅԻՆ, 1. **տնկադաշտ**, մասնագիտացված տեխ. և պարեն. մշակաբույսերի (հիմնականում՝ արևադարձ. և մերձարևադարձ.) աճեցման խոշոր տնտ–յուն: 2. Ընդարձակ հողամաս, որտեղ մշակվում են որոշակի գղտ. բույսեր (օր.՝ ճակնդեղ, թեյ ևն):

ՊԼԱՆՏԵՆ (Plantin) Քրիստոֆ (1514–1589), նիդեռլանդացի տպագրիչ, հրտ.: 1555–ին՝ Անտվերպենում (գործել է մինչև 1865–ը, 1877–ից՝ թանգարան), ապա նաև Լեյդենում ու Փարիզում հիմնադրել է տպարաններ, լույս ընծայել ավելի քան 1600 անուն տպագիր գրկ–յուն:

ՊԼԱՍՏԻԴՆԵՐ (հուն.՝ plastos – կերտված), բուս. բջիջների բջջապլազմ. օրգանոիդներ:

ՊԼԱՍՏԻԼԻՆ (իտալ.՝ plastilina, < հուն. plastos – ձեփակերպ), ձեփագործ. նյութ: Պատրաստում են կավի մաքուր և մանրացրած փոշուց՝ մոմ, ճարպ և չորացումը խոչընդոտող այլ նյութեր ավելացնելով: Կիրառում են էսքիզներ, ոչ մեծ մոդելներ ստեղծելու համար:

ՊԼԱՍՏԻԿ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ (վերականգնողական վիրաբուժություն), *վիրաբուժության* բաժին. իրականացնում է օրգանների կամ մարմնի մասերի մասնակի կամ լրիվ կորցրած (վնասվածքների, վիրահատությունների կամ զարգացման արատների դեպքերում) կամ մարմնի տգեղացված հատվածների (այրվածքից, հիվանդություններից հետո) վերականգնման վիրաբուժություն:

ՊԼԱՍՏԻԿԱՏ, պլաստիֆիկացված պոլիվինիլքլորիդի հիմքով էլաստիկ պլաստմասսա: Արտադրվում է հատիկների, թաղանթների, թերթերի տեսքով, կիրառվում հաղորդալարերի և մալուխների մեկուսիչների, ինչպես նաև ճկուն խողովակների, խաղալիքների, մոմլաթների արտադր–յան մեջ:

ՊԼԱՍՏԻԿԱՐԱՐՆԵՐ, **պոլիմերների փափկեցուցիչներ**, նյութեր, որոնք պլաստմասսաներին, ռետինին, լաքերին, ներկերին, սոսինձներին ավելացնելիս մեծացնում են նրանց ***պլաստիկությունն*** ու առաձգականությունը: Որպես Պ.՝ օգտագործում են չցնդող, քիմիապես իներտ նյութեր, որոնք համատեղելի են պոլիմերի հետ, օր.՝ երկբութիլֆտալատ, եռկրեզիլֆոսֆատ, նավթայուղեր ևն:

ՊԼԱՍՏԻԿՈՒԹՅՈՒՆ (հուն.՝ plastikos – դյուրամշակելի), պինդ մարմնի՝ մեխ. բեռնվածքների ազդեցությամբ անդարձելի ձևախախտումների ենթարկվելու հատկություն: Պ–յամբ է պայմանավորված նյութերի ճկշումային մշակման (կռում, գլոցում) հնարավորությունը:

ՊԼԱՍՄԱՍՍԱՆԵՐ, պլաստիկ զանգվածներ, բնական կամ սինթետիկ պոլիմերներ, որոնք ճնշման տակ տաքացնելիս կաղապարվում են և սառեցնելուց հետո պահպանում ստացած ձևը: Պինդ, էլեկտրամեկուսիչ նյութեր են, տաքացնելիս դառնում են մածուցիկահոսուն, բարձրաառձգական: Սինթետիկ պոլիմերից ստացված 1–ին Պ. ցելուլոիդն է, որի արտադր–յունն սկսվել է 1872–ին ԱՄՆ–ում: Կաղապարման ընթացքում, ըստ քիմ. և ֆիզ. փոխարկումների բնույթի, Պ. լինում են **ջերմապլաստներ** և **ռեակտոպլաստներ:**

ՊԼԱՍՏՈՎ Արկադի Ալեքսանդրովիչ (1893–1972), ռուս. գեղանկարիչ: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1962): ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի անդամ (1947): Հեղինակ է պլեներ. ժանր. նկարների, բնանկարների, դիմանկարների («Խոտհունձ», 1945, «Տրակտորիստների ընթրիքը», 1951, «Գարուն», 1954, ևն): Ձևավորել է Ն. Ա. Նեկրասովի, Լ. Ն. Տոլստոյի, Ա. Պ. Չեխովի երկերից: ԽՍՀՄ Պետ. (1946), Լենինյան (1966) մրց–ներ:

ՊԼԱՎՏՈՍ (Plautus) Տիտոս Մակկիոս (մ. թ. ա. մոտ 250–մոտ 184), հռոմեացի կատակերգակ: Ատտիկյան նոր կատակերգությունը վերամշակելով ծաղրանկարի ու բուֆոնադի ոճով՝ չափածո գործերում ստեղծել է ազգ. երգիծ. դիմակ–կերպարներ: Հեղինակ է հուն. բարքերը ծաղրող «Ավանակներ», «Պարծենկոտ զինվորը», «Բաքոսականք», «Տեսիլք» և այլ կատակերգությունների:

ՊԼԱՏԵ Նիկոլայ Ալֆրեդովիչ (1934–2007), ռուս. քիմիկոս: ՌԳԱ ակադ. (1987): Աշխ–ները վերաբերում են պոլիմերների քիմ. ձևափոխումներին և պոլիմեր. օղակների ռեակցիոնունակության տեսությանը:
ԽՍՀՄ Պետ. մրց. (1985):

ՊԼԱՏԵՆ (Platen) Ավգուստ, **Գեորգ Մաքսիմիլիան**, կոմս ֆոն Պլատեն–Հալերմյունդե (1796–1835), գերմանացի բանաստեղծ: Հեղինակ է «Գազելներ» (1821), «Նոր գազելներ» (1823) ժող–ների, նաև բալլադների, քաղ. թեմաներով բանաստեղծությունների, «Ճակատագրական պատառաքաղ» (1826), «Ռոմանտիկ էդիպը» (1829) սատիր. չափածո պիեսների:

ՊԼԱՏԻՆ (Platinum), Pt, տարրերի պարբեր. համակարգի VIII խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 78, ա. զ.՝ 195,08: Ազնիվ մետաղ է, պատկանում է ***պլատինային մետաղների*** շարքին: Անվանումը՝ իսպ. platina բառից, որը արծաթ (Plata) բառի փոքրացուցիչ ձևն է՝ արծաթիկ: Պ. հազվագյուտ տարր է, արծաթասպիտակ, կռելի, կոռոզիակայուն ծանր մետաղ է: Պարամագնիսական է, ջերմության, էլեկտրականության լավ հաղորդիչ: Պլաստիկ է, հեշտությամբ մամլվում է: Քիմիապես պասսիվ է: Պ–ից և նրա համաձուլվածքներից պատրաստում են քիմ. արդ–յան մեջ օգտագործվող կոռոզիակայուն սարքեր, անոթներ, էլեկտրոդներ, ֆիլերներ, տիգելներ, կատալիզորդներ, ոսկերչ. իրեր, բժշկ. գործիքներ ևն:

ՊԼԱՏԻՆԱՅԻՆ ՄԵՏԱՂՆԵՐ, պլատինոիդներ, տարրերի պարբեր. համակարգի VIII խմբի քիմ. տարրերը՝ ռութենիում՝ Ru, ռոդիում՝ Rh, պալադիում՝ Pd, օսմիում՝ Os, իրիդիում՝ Ir, պլատին՝ Pt: Չափազանց հազվագյուտ տարրեր են: Սպիտակ, արծաթափայլ, դժվարահալ մետաղներ են: Քիմ. կայունության և գեղեցիկ տեսքի շնորհիվ արծաթի և ոսկու հետ դասվում են ազնիվ մետաղների շարքին:

ՊԼԱՏԻՆԱՊԱՏՈՒՄ, 1. մետաղե պատրաստվածքների մակերևույթի էլեկտրոլիտիկ պատումը պլատինի բարակ շերտով, դրանց կոռոզիակայունությունը, մաշակայունությունը, անդրադարձիչ ունակությունը մեծացնելու համար: 2. Արզնահողի հատիկների տոգորումը նախ պլատինաքլորաջրածնական թթվով, ապա՝ պլատինի վերականգնումով, Պ–ված արզնահողն օգտագործում են որպես կատալիզորդ:

ՊԼԱՏԻՆԵԼ, ազնիվ մետաղների համաձուլվածքներ բարձր զգայունության ջերմազույգերի էլեկտրոդների (55 % Pd, 31 % Pt, 14 % Au՝ դրական էլեկտրոդների, 65 % Au, 35 % Pd՝ բացաս. էլեկտրոդների) համար: Պ–ից պատրաստված ջերմազույգերով կարելի է չափել մինչև 1300°C ջերմաստիճաններ:

ՊԼԱՏԻՆԻ (Platini) Միշել (ծ. 1956), ֆրանսիացի ֆուտբոլիստ և մարզիչ: Ճանաչվել է Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստ (1983, 1984, 1985, միակը՝ անընդմեջ): Եվրոպայի չեմպիոն (1984): «Յուվենտուս»–ի (Տուրին) կազմում գավաթների գավաթի (1984) և Եվրոպայի չեմպիոնների (1985) գավաթակիր: 1988–92–ին՝ ֆրանսիայի հավաքականի մարզիչ: 2007–15–ին՝ ՈՒԵՖԱ–ի նախագահ:

ՊԼԱՏԻՆԻ ՀԱՆՔԱՆՅՈՒԹԵՐ, գլխ. միներալներն են բնածին պլատինը, պոլիքսենը, ֆեռոպլատինը, պլատինիում–իրիդիումը, նևյանսկիտը ևն: Պարունակում

են *գ/կր*-ի մասից մինչև *կգ/կր* միավոր, ցրոնները՝ մի քանի *մգ/մ³–գ/մ³*: Արդյունահանող երկրներն են ՀԱՀ-ը, Կանադան, Կոլումբիան, Ֆինլանդիան, ԱՄՆ-ն, ՌԴ-ն:

ՊԼԱՏԻՆՈՏՐՈՆ (հուն.՝ platino – լայնացնել), մագնետրոնային տիպի (հակադարձ ալիքի) էլեկտրավակուումային սարք՝ ԳԲՀ էլեկտրամագնիս. տատանումների լայնաշերտ ուժեղացման և գեներացման համար: Կիրառում են կապի համակարգերի, ռադիոտեղորոշման կայանների հաղորդիչ սարքերում են:

ՊԼԱՏԻՊԵՑԻԼԱՅԻՆՆԵՐ, պեցիլաձևնեբի ընտանիքի ձկների սեռ: Երկ.՝ 4–7 *սմ*: Մարմինը կարճ է՝ պոչային լայն լողակով: Գունավորումը՝ դեղնավուն-գորշ՝ մուգ բծերով: Հայտնի է մոտ 10 տեսակ՝ Հս. Ամերիկայի հվ. մասի քաղցրահամ ջրերում: Պ-ի բազմաթիվ գունավոր ձևեր բազմացնում են աքվարիումներում:

ՊԼԱՏՈ (ֆրանս.՝ plateau, < plat – հարթ), սարահարթ. հարթավայր՝ շրջապատված խիստ արտահայտված սանդղավանդներով:

ՊԼԱՏՈՆ (Platón), **Պղատոն Աթենացի** (Արիստոկլես, մ. թ. ա. 428/427–348/347), հույն փիլ.: Անտիկ իդեալիզմի խոշոր ներկայացուցիչ: ***Սոկրատեսի*** աշակերտը: Մոտ 387-ին Աթենքում հիմնադրել է սեփ. դպրոցը՝ ***Պլատոնյան ակադեմիան***: Ըստ Պ-ի՝ գաղափարները (էյդոս) իրերի, անփոփոխ և անցողիկ կեցության հավերժ. և անփոփոխ մտահասանելի նախակերպարներն են, իրերը՝ գաղափարների արտացոլումները: Ճանաչողությունը գաղափարների մասին հոգու հիշողություններ են (անամնեսիս), որոնք նա ձեռք է բերել մինչ մարմնին միավորվելը: Գաղափարի հանդեպ սերը (էրոս) հոգևոր վերածնության դրդիչ պատճառն է: Պ. առանձնացրել է իդեալ. պետության 3 դաս՝ կառավարիչ-իմաստունների, ռազմիկների և հողագործ-արհեստավորների: Պ-ին համարել են աստված. ուսուցիչ (անտիկ շրջան), քրիստ. աշխարհայացքի նախակարապետ (միջնադար), իդեալ. սիրո փիլ. և քաղ. ուտոպիստ (Վերածննդի դարաշրջան) ևն: Պ-ի ստեղծագործությունները բարձրարժեք գեղ. երկխոսություններ են, որոնցից առավել արժեքավոր են «Սոկրատեսի ջատագովությունը», «Ֆեդոն», «Խնջույք», «Ֆեդրոս» (ուսմունք գաղափարների մասին), «Պետություն», «Թեետետոս» (իմացաբանություն), «Պարմենիդեսը», «Սոփեստ» (կատեգորիաների դիալեկտիկա), «Տիմեոս» (բնափիլ.) ևն:

ՊԼԱՏՈՆԱԿԱՆ ՍԵՐ, ցանկասիրությունից զերծ, ոչ մարմն., զուտ հոգևոր սեր: Արտահայտությունը կապվում է ***Պլատոնի*** ուսմունքի հետ: Պլատոնը գեղարվեստորեն ներկայացրել է սիրո վեր բարձրացումը մարմնականից դեպի հոգու և մաքուր գաղափարների աշխարհը:

ՊԼԱՏՈՆՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ, մ. թ. ա. մոտ 387-ին Աթենքում ***Պլատոնի*** հիմնադրած փիլ. դպրոցը. գործել է մինչև մ. թ. ա. I դ.: Անտիկ գիտ-յան և իդեալիստ. փիլ-յան խոշորագույն կենտրոն: Պ. ա-ի ավանդույթը նորոգվել է Աթենքի դպրոցում միջին պլատոնականության (I–II դդ-ի կեսեր) և նորպլատոնականության (IV դ.–VI դ-ի կես) շրջաններում: Վերածննդի փուլում Պ. ա. հիմնադրվել է Ֆլորենցիայում (1459–1521)՝ Մ. Ֆիչինոյի գլխավորությամբ: Հայ փիլ. գրկ-յան մեջ Պ. ա-ի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ են պահպանվել ***Դավիթ Անհաղթի*** «Սահմանք իմաստասիրութեան» և «Մեկնութիւն ստորոգութեանցն Արիստոտէլի» երկերում:

ՊԼԱՏՈՆՈՎ Անդրեյ Պլատոնովիչ (1899–1951), ռուս գրող: Հեղինակ է կեցության հակասականության ու ողբերգականության մասին «Եպիֆանյան արգելակներ» (1927), «Գրադով քաղաքը» (1928), «Պոտուդան գետը» (1937), «Հիմնախորշ (Գուբը)» (հրտ.՝ 1969, հայ.՝ 2009) վիպակների, «Ձան» (հրտ.՝ 1964), «Չեվենգուր» (հրտ.՝ 1972, հայ.՝ 2015) պատմվածքների ժողովների, «Երջանիկ Մոսկվան» (անավարտ, հրտ.՝ 1991, հայ.՝ 2015) վեպի: Հայ. հրատարակվել է նաև «Հիասքանչ ու ցասումնալի աշխարհում» (1977) պատմվածքների ու վիպակների ժող-ը:

ՊԼԱՏՈՆՈՎ, Բորիս Վիկտորովիչ (1903–1967), բելառուս դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1948): 1922-ից՝ Յ. Կուպալայի անվ. բելոռուս. թատրոնի (1961–63-ին՝ գեղ. ղեկ.) դերասան (Օգնև՝ Ա. Ե. Կոռնեյչուկի «Ռազմաճակատ», Կոնստանտին Զասլոնով՝ Ա. Ի. Մովզոնի «Կոնստանտին Զասլոնով», Տումիլովիչ՝ Կ. Կրապիվայի «Երգում են արտույտները», ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1948, 1952):

ՊԼԱՏՈՆՈՎ, Վլադիմիր Պետրովիչ (ծ. 1939), բելառուս մաթեմատիկոս: Բել. ԳԱ ակադ. (1972, նախագահ՝ 1987–92-ին), ՌԴԱ ակադ. (1987): Աշխ-ները վերաբերում են հանրահաշվ. երկրչփ-յանը և հանրահաշվ. թվերի տեսությանը: Լենինյան մրց. (1978):

ՊԼԱՏՖՈՐՄ (ֆրանս.՝ plate-forme – բառացի՝ հարթ ձև), երկրակեղևի սալաձև բազմանկյուն խոշոր բլոկներ, որոնք կազմում են ցամաքազանգվածների և օվկիանոս. մարզերի կենտր. ողորկ մակերևույթ ունեցող շրջանները (Երկրի մակերևույթի մոտ 2/3-ը) և եզրապատված են ծալքավոր լ-շղթաներով ևն: Ունի երկհարկանի կազմություն:

ՊԼԱՑԴԱՐՄ (ֆրանս.՝ place d'armes – զորահրապարակ), հարձակվող զորքերի՝ ջր. արգելքների մարտանցման ընթացքում գրաված կամ նահանջելիս հակառակ ափին զբաղեցրած տարածքը:

ՊԼԱՈՒԴԵ (Plaude) Կառլիս (1897–1975), լատվիացի ջերմատեխնիկ: Լատվ. ԽՍՀ ԳԱ ակադ. (1951, նախագահ՝ 1960–70-ին), ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1960): Աշխ-ները վերաբերում են ջերմ. էներգետիկ. համակարգերի ջերմամատակարարմանը:

ՊԼԵԱՌՆԵՐ, *Ապրանտի* 7 դուստրերը հուն. դից-յան մեջ, որոնց Զևսը վերածել է համաստեղության: Փխր. իմաստով՝ խումբ, տաղանդավոր բանաստեղծների, քաղ. գործիչների և ուր. «համաստեղություն» (ալեքսանդրյան Պ., մ. թ. ա. III դ., պուշկինյան Պ., XIX դ.):

ՊԼԵԲԵՅՆԵՐ (լատ.՝ plebeii, < plebs – հասարակ ժողդ), սկզբնապես ազատ բնակչություն Հին Հռոմում, որը ներգրավված չէր տոհմ. համայնքի մեջ և իրավունք չուներ օգտվելու համայն. հողերից: ***Պատրիկների*** դեմ տևական ու համառ պայքարից (մ. թ. ա. V դ-ի սկիզբ–մ. թ. ա. III դ-ի սկիզբ) հետո Պ. ձուլվել են հռոմեացիների հետ: Փխր. իմաստով՝ հասարակ ծագում ունեցողներ:

ՊԼԵԶԻՈԶԱՎՐԵՐ (Plesiosauria), զաուրոպտերիգիաների կարգի անհետացած ծով. սողունների ենթակարգ: Երկ.՝ մինչև 15 *մ*: Ունեցել են երկար պարանոց: Հայտնի են միջին տրիասից մինչև ուշ կավճի դարաշրջան՝ բոլոր մայրցամաքների ծով. նստվածքներում (բացի Անտարկտիդայից): Ուղեցույց բրածոներ են:

ՊԼԵԹՈ (Pletho) Գեորգիուս Գեմիստուս (մոտ 1355–1452), բյուզանդացի պլատոն. փիլ., գիտնական և քաղ. գործիչ: Աշակել է քաղ. բարեփոխումների ծրագիր, որը միտված էր Բյուզանդիան ճգնաժամից դուրս բերելուն, ստեղծել է քրիստոնեությանը հակադիր համընդհ. կրոն. համակարգ, որը հիմնականում համընկնում էր հունա-հռոմ. հեթանոսության հետ («Օրենքներ» կրոնաքաղ. ուտոպիան այրվել է 1460-ին): Պ-ի աջակցությամբ Ֆլորենցիայում հիմնադրվել է Պլատոնյան ակադեմիա:

ՊԼԵՅՍՏՈՆ (հուն.՝ pleusis – լողալ, < pleo – լողում եմ), ջր. օրգանիզմների ամբողջություն, որոնք ապրում են ջրի մակերևույթին կամ կիսաընկղմված: Պ. են, օր., սարգասային ջրիմուռները, որոշ սիֆոնոֆորներ:

ՊԼԵՅՍՏՈՑԵՆ, *չորրորդական ժամանակաշրջանի* ստորին՝ ամենատևական մասը, որն ընդգրկում է բոլոր սառցադաշտ. և միջսառցադաշտ. դարաշրջանները: Եզրույթն առաջարկել է շոտլանդացի երկրաբան Չառլզ Լայլը (1832): Ստորաբաժանվում է ստորին, միջին և վերին Պ-ի: Բնորոշվում է երկրի կլիմայի ընդհ. սառեցմամբ և միջին լայն-յուններում լայնածավալ ծածկոց. սառցապատումների պարբեր. առաջացմամբ: Հայաստանի լ-շղթաները կրում են միջին և վերին Պ-ի սառցապատումների հետքերը: Ռուս. հարթավայրի ծածկոց. սառցապատումների դարաշրջաններում Հայաստանում գոյություն են ունեցել պլյուվիալ (լատ.՝ pluvial – անձրև) պայմաններ:

ՊԼԵՆԵՐ (ֆրանս.՝ plein air – բաց օդ, բացօթյա) **գեղանկարչության մեջ**, օդ. միջավայրի գույն. փոփոխությունների վերարտադր-յունը: Պ-ի որոշ տարրեր ի հայտ են եկել դեռևս իտալ. Վերածննդի և XVII դ-ի գեղանկարիչների գործերում, սկզբունքները տարածվել են XIX դ-ի 1-ին կեսին: Պ-ով են աշխատել Հ. Այվազովսկին, Ե. Թադևոսյանը, Մ. Սարյանը, Վ. Մախոխյանը և ուր.:

ՊԼԵՇԱՎԱՆ, լիճ ՌԴ Յարոսլավլի մարզում: Մակերեսը՝ 50,8 *կմ²*, խոր.՝ մինչև 25 *մ*: Կա ձկնաբուծություն: Ներառված է Պերեսլավսկի ազգ. պարկի կազմում: Ափին է Պերեսլավլ-Զալեսկի ք-ը: XVII դ-ի վերջին լճի վրա կառուցվել է Պետրոս I-ի «զվարճական» ուս. նավատորմիկը:

ՊԼԵՍԵՅԿ, տիեզերական ՌԴ Արխանգելսկի մարզում: Ստեղծվել է 1960-ին: Պ-ից արձակվել են «Կոսմոս», «Մոլնիա», «Մետեոր», «Ինտերկոսմոս» տիպերի ԵԱՀ-ները:

ՊԼԵՄՆԵՐ (Plessner) Հելմուտ (1892–1985), գերմանացի փիլ., սոցիոլոգ: Փիլ. մարդաբանության հիմնադիրներից (Մ. ***Շելերի*** հետ): Հիմն. աշխ-ներն են՝ «Օրգանականի աստիճանները և մարդը»(1928), «Ծիծաղը և լացը» (1941):

ՊԼԵՎԵՆ, ք. Բուլղարիայի հս-ում, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 102 հզ. (2014):

ՊԼԵՆՅՈՎ, Դմիտրի Դմիտրևիչ (1872–1941), ռուս թերապևտ: ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1933): ԽՍՀՄ-ում սրտաբանության հիմնադիրներից: Աշխ-ները վերաբերում են վարակիչ հիվանդություններին, պսիխոսոմատիկայի, բժշկագիտության պատմության և մեթոդաբանության

խնդիրներին: 1938–ին անհիմն բռնադատվել է, գնդակահարվել:

ՊԼԵՔՍԻԳԼԱՍ, օրգ. ապակու (թերթային պոլիմեթիլմետակրիլատ) ապրանք. անվանումը: Արտադրվում է ԱՄՆ–ում, Գերմանիայում, Ֆրանսիայում:

ՊԼԶԵՆ (Plzeň), ք. Չեխիայում, համանուն երկրամասի վարչ. կենտրոնը: Բն.՝ 165 հզ. (2010): Զարգացած է գարեջրագործությունը, զրոսաշրջությունը: Հիմնադրվել է Վացլավ II թագավորի օրոք՝ մոտ 1292–ին: 1419–ին եղել է Հուսյան շարժման հեղ. թևի հենակետ, չեխ. ազգ. մշակույթի կենտրոն: Պ–ում են Սբ Բարդուղիմեոսի գոթ. եկեղեցին (VIII–XV դդ.), Վերածննդի շրջանի քաղաքապետարանը (XVI դ.):

ՊԼԻՄՈՒԹ (Plymouth), ք. Մեծ Բրիտանիայում (Անգլիա)՝ Կոռնուոլ թ–կղզում: Բն.՝ 253 հզ. (2010): Նվինգստ է Լա Մանշ նեղուցի ափին: Զարգացած են նավաշինությունը, նավանորոգումը, ձկնաբուծությունը, ջինի արտադր–յունը: Պ–ում կան ծով. կենսբ. լաբորատորիա, աքվարիում, ռազմածով. հենակետ: Հիմնադրվել է XII դ–ում:

ՊԼԻՄՈՒՏՐՈՒԿ, հավերի մսաձվատու ցեղ: Բուծվել է ԱՄՆ–ում XIX դ–ի 2–րդ կեսին: Ունի շերտավոր, սպիտակ և այլ տեսակներ: Աքաղաղների կ. զ.՝ 3,8–4,0 *կգ*, հավերինը՝ 2,7–3,0 *կգ*: Տարեկան միջին ձվատվությունը՝ 160–180 (առլձն՝ մինչև 200): Սպիտակ Պ. օգտագործվել է կոռնիշ ցեղի հետ տրամախաչմամբ՝ մսացու ճուտ (բրոյլեր) ստանալու համար:

ՊԼԻՆԻՈՍ ԱՎԱԳ, Գայոս Պլինիոս Սեկունդոս [Gaius Plinius Secundus (Maior), 23/24–79], հռոմեացի գիտնական, ռազմ. և պետ. գործիչ: Պ. Ա.–ից մեզ հասած միակ՝ «Բնական պատմությունը» (գիրք 1–37, գրել է Տիտոս կայսեր հանձնարարությամբ, ավարտել 77–ին) երկը, որն անտիկ աշխարհի ինքնատիպ հանրագիտարան է, տեղեկություններ է պարունակում նաև Հայաստանի մասին (հիմնականում՝ գիրք 5–6):

ՊԼԻՆԻՈՍ ԿՐՏՍԵՐ, Գայոս Պլինիոս Կեկիլիոս Սեկունդոս [Gaius Plinius Caecilius Secundus (Minor), 61/62–մոտ 114], հռոմեացի գրող և պետ. գործիչ: *Պլինիոս Ավագի* զարմիկը և հոգեզավակը: Եղել է *կոնսուլ* (100), կայսեր. լեգատ (111–113) Բութանիա և Պոնտոս պրովինցիաներում: Մեզ են հասել նամակների ժող–ը (10 գրքով) և «Ներբող Տրայանոսին» ճառը:

ՊԼԻՍԵՑԿԱՅԱ Մայա Միխայլովնա (1925–2015), բալետի ռուս. արտիստուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1959): Սոց. աշխ. հերոս (1985): Ռ. Կ. *Շչեդրինի* կինը: 1943–88–ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մենապարուհի (Օդետա–Օդիլիա՝ Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճը», Կիտրի՝ Լ. Ֆ. Մինկուսի «Դոն Կիխոտ», Կարմեն՝ Ժ. Բիզեի Ռ. Կ. Շչեդրինի «Կարմեն–սյուիտ», ևն): Պ–ի համար բալետներ են գրել Ռ. Պետին («Վարդի կորուստը», երաժշտությունը՝ Գ. Սահիերի) և Մ. Բեժարը («Այսեդորա», երաժշտությունը՝ Մ. Բեժարի): Բեմադրել է բալետներ՝ «Աննա Կարենինա» (1972), «Ճայ» (1980), «Ծնիկով տիկինը» (1985, երկուսն էլ՝ երաժշտ.՝ Ռ. Կ. Շչեդրինի, գլխ. դերապարերը՝ Պ.): 1988–90–ին՝ Մադրիդի «Թեատրո լիրիկո նասիոնալ»–ի գեղ. ղեկ.: Նկարահանվել է կինոյում:

Լենինյան մրց. (1964), Ֆրանսիայի Արվ–ի և գրկ–յան (1984), «Պատվո լեգեոնի» (1986, 2012) շքանշաններ ևն:

ՊԼՅՈՒԿՖԵԼԴԵՐ Ռուդոլֆ Վլադիմիրովիչ (ծ. 1928), գերմանացի ծանրորդ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1962), ս. վ. մ. (1965): Օլիմպ. խաղերի (1964), աշխարհի, Եվրոպայի և ԽՍՀՄ բազմակի (1958–64) չեմպիոն: Աշխարհի բազմակի ռեկորդակիր (1958–61)՝ միջին քաշ. կարգում:

ՊԼՅՈՒՇԱՐ Ադոլֆ Ալեքսանդրովիչ (1806–1865), ռուս. հրտ., տպագրիչ: 1834–41–ին լույս է ընծայել «Հանրագիտական բառարան» (հ. 1–17, անավարտ), Վ. Ի. Դալի «Ռուսական հեքիաթներ» ժող–ը, ռուս և օտարազգի դասականների երկեր, արվ–ի պարբ–ներ:

ՊԼՅՈՒՍ (լատ.՝ plus – ավելի շատ), «+» նշանը մաթ–ում, արտահայտում է գումարման գործողություն և ցույց է տալիս թվերի դրական լինելը:

«+ԿԻՆՈ», կինոարվ–ի եռամսյա հանդես (2008–ից, Երևան): ՀՀ կինեմատոգրաֆիստների միության և ՄՆ հրտ–յուն: Խմբ–ներ՝ Արտյոմ Երկանյան, Ռոբերտ Մաթոսյան (2012–ից):

ՊԼՅՈՒՐԱԼԻԶՄ (լատ.՝ pluralis – բազմակի), 1. փիլ. ուսմունք, ըստ որի՝ գոյություն ունեն կեցության բազմաթիվ անկախ նախասկիզբներ: «Պ.» հասկացությունը ներմուծել է Ք. *Վոլֆը* (1712): 2. Հաս–յան ժողովրդավար–քաղ. համակարգի բնորոշում, որտեղ սոցիալ. խմբերը (քաղ. կուսյուններ, եկեղեց. և այլ կազմ–յուններ) ունեն օրգ. (ինստիտուցիոնալ) հնարավորություններ սեփական ներկայացուցիչների միջոցով արտահայտելու իրենց հետաքրքրությունները:

ՊԼՈԵՇՏԻ (Ploiești), ք. Ռումինիայի հվ–ում, Պրահովա ժուդեցի վարչ. կենտրոնը: Բն.՝ 234 հզ. (2010): Նավթահանք. շրջանի կենտրոն է: Խողովակուղու հանգույց է:

ՊԼՈՎԴԻՎ, ք. Բուլղարիայի հվ–ում՝ Մարիցա գետի ափին: Համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 319 հզ. (2010): Երկրի 2–րդ արդ. և մշակութ. կենտրոնն է՝ Սոֆիայից հետո: Ունի օդանավակայան: Պ–ում 1933–ից տեղի է ունենում ամենամյա ցուցահանդես–տոնավաճառ: Մ. թ. ա. 342–ին Ֆիլիպպոս II Մակեդոնացու՝ ք–ի նվաճումից հետո կոչվել է Ֆիլիպպոպոլիս: Սլավոն. անվանումը՝ Պլենդիվ: Պահպանվել են թուրք. մինարեթ (XV դ.), եկեղեցիներ (XIX դ.), Միջազգ. տոնավաճառի անասմբլը (1948–49):

Հայերը Պ–ում հաստատվել են դեռևս VI դ–ից: Գաղութն ստվարացել է VIII–XIII դդ–ում՝ 1895–96–ին Ա.րմ. Հայաստանում թուրք. ջարդերից, 1915–ի Մեծ եղեռնից, 1990–ական թթ–ի ՀՀ–ից արտագաղթից հետո: Պ–ում գործում են հայ ազգ. կուսյունների տեղ. կազմ–յունները, Սբ Գևորգ եկեղեցին, վարժարաններ, դպրոցներ, մշակութ. կազմ–յուններ ևն: 2014–ին Պ–ում կար 9 հզ. հայ: Տես նաև *Բուլղարիա*:

ՊԼՈՏԻՆ (Plotinus), **Պլոտինոս Լիկոպոլսեցի** (մոտ 204/205–մոտ 270), հույն փիլ.: Նորպլատոնականության հիմնադիրը: Պ–ի աշխ–ները նրա աշակերտ Պորփյուրը բաժանել է 6 իննյակի (Էնեադներ) և հրապարակել ուսուցչի մահվանից հետո: Ըստ Պ–ի՝ ամեն ինչի հիմքը գերբնական և գերզգայական աստված «առաջնամիակն» է, որը ենթակա չէ որևէ սահմանման, բանական կամ զգայական ճանաչման: Մարդկային հոգու ճանապարհը զգայական աշխարհից վերելքն է և միասնականի հետ միաձուլումը: Պ. նկատելիորեն նպաստել է անտիկ դիալեկտիկայի զարգացմանը:

ՊԼՈՏՆԻԿՈՎ, Պավել Արտեմևիչ (1920–2000), խորհրդ. օդաչու, ավիացիայի գեն–մայոր (1966): ԽՄ հերոս (1944, 1945): ՀՄՊ–ի ժամանակ սավառնակախմբի հրամ.՝ ռմբակոծիչ օդանավատորմում. կատարել է 343 մարտ. թռիչք:

ՊԼՊՈՒԼ ՋԱՐԵՀ (Պարոնյան Զարեհ Հակոբի, 1891–1961), բանաստեղծ, մանկավարժ, հաս. գործիչ: Հեղինակ է «Ընդվզում» (1912) արձակ տաղերի, «Ճակատագրի փուշին վրայ» (1927), «Բաժակ մը երգ» (1941) բանաստեղծությունների ժող–ների, «Մեր ժամուն սուրբերը» (1946, Բուխարեստի հայ մշակույթի տան գր. մրց.) նորավեպի, «Ծաղկեփունջ» (1956) ժող–ի:

ՊԼՈՒՆԳՅԱՆ Վլադիմիր Ալեքսանդրովիչ (ծ. 1960), ռուս. լեզվաբան: ՌԳԱ ակադ. (2016, թղթ. անդամ՝ 2009–ից): 2016–ից՝ «Վոպրոսի յազիկոզնանիյա» (ռուս.) ամսագրի գլխ. խմբ.: Հեղինակ է տիպաբանության և քերական. տեսությունների խնդիրներին, քերական. և բառապաշարի իմաստաբանությանը, կորպուսային լեզվաբ–յանը, աֆրիկյանությանը, բանաստեղծ. արվ–ին վերաբերող աշխ–ների: Նյութեր է հավաքել նաև Հայաստանում:

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ (Plutarchus), **Քերոնվացի** (մոտ 45–մոտ 127), հույն գրող, պատմագիր, փիլ.: Հեղինակ է հույն և հռոմեացի ականավոր շուրջ 50 գործիչների նվիրված «Զուգահեռ կենսագրություններ» (հայ.՝ «Զուգակշիռք», հ. 1–6, 1832–35), «Բարոյականք» (հայ.՝ 1860) պայման. վերնագրի տակ միավորված երկերի: «Էթիկա» ընդհ. վերնագրով աշխ–ն ընդգրկում է Պ–ի բարոյախրատ., փիլ. գործերը: «Թագավորների և զորավարների ասույթներ»–ում ներկայացրել է Հայաստանը, հայ գործիչներին: Հարել է Պլատոնյան ակադ–ին, տուրք է տվել ստոիկյան, պյութագորասականության ազդեցություններին:

ՊԼՈՒՏՈՆ, Արեգակի շուրջ 39,48 *ա. մ.* միջին հեռ–յամբ պտտվող երկնմ. մարմին: Ուղեծիրը խիստ ձգված է. Արեգակից նվզգն հեռ.՝ 29,6 *ա. մ.*, առլձն՝ 49,3 *ա. մ.*: Հայտնաբերվել է 1930–ին, մինչև 2006–ը համարվել է Արեգակն. համակարգի ամենահեռավոր մոլորակը: 2006–ին Միջազգ. աստղագիտ. միության որոշմամբ դասվել է Կոյպերի գոտու գաճաճ մոլորակների թվին (Pluto 134 340 անվանումով): Զանգվածը՝ $1{,}3 \cdot 10^{22}$ *կգ* (0,0021 Երկրագնդի զանգված), հասարակած. տրամագիծը՝ 2390 *կմ*, պտտման պարբերությունը՝ 24,8 տարի, մակերևույթի ջերմաստիճանը՝ 33–55 K: Մթն. շերտը բարակ է, կազմված է N_2–ից, CO–ից և CH_4–ից: Իր ամենամեծ արբանյակի՝ Քարոնի հետ կազմում է կրկնակի համակարգ, որի ծանրության կենտրոնը գտնվում է նրանցից դուրս: Հայտնաբերված են Պ–ի ևս 2 ավելի փոքր արբանյակներ:

ՊԼՈՒՏՈՆԻԶՄ (լատ.՝ Plutonismus – Պլուտոն, ստորերկրյա թագավորության աստված), ուսմունք երկրբ. պատմության ընթացքում հրաբխականություն, երկրաշարժեր և տեկտ. շարժումներ առաջացնող Երկրի ներքին ուժերի առաջատար նշանակության մասին: Լայնորեն տարածվել է XVIII–XIX դդ–ում: Հիմն. գաղափարներն ամփոփել է անգլիացի երկրբարան Ջ. Հատտոնը (J. Hutton) «Երկրի տեսություն» (1795) աշխ–յան մեջ:

ՊԼՈՒՏՈՆԻՈՒՄ (Plutonium), տարրերի պարբեր. համակարգի III խմբի քիմ.

տարր: Կարգաթիվը՝ 94, ա. զ.՝ 244,0642, պատկանում է ակտինիդների ընտանիքին: Արհեստականորեն ստացվող ճառագայթաակտիվ տարր է: Առավել կայուն իզոտոպը՝ ^{244}Pu ($T_{1/2}$՝ $8{,}05.10^7$ տարի): Անվանումը՝ ***Պլուտոնի*** անունից: Սպիտակ, արծաթափայլ մետաղ է, խտ.՝ 19,8 *գ/սմ*^{3}, $t_{հալ.}$՝ 640°C: Ամենադյուրահալ ակտինիդն է: Քիմիապես ակտիվ է (նման է ուրանին և նեպտունիումին): Միջուկ. ռեակտորներում ստացվող ^{239}Pu իզոտոպը կարևոր միջուկ. վառելիք է:

ՊԼՈՒՏՈՍ (Plutus), հարստության աստվածը հուն. դից–յան մեջ: Պատկերվել է մարդկանց հարստություն բաժանող կույր ծերունու կամ առատության եղջյուրը ձեռքին պատանու կերպարանքով:

ՊՀՈՀԱՆ, ք. Կորեայի Հանրապետությունում: Բն.՝ 268,5 հզ. (2010): Նվինգստ է Ճապոն. ծովի ափին (բեռնաշրջանառությունը՝ 62 մլն *տ*, 2007): Սև մետաղազործության խոշոր կենտրոն է:

ՊՂԻՆՁ (Cuprum), Cu, տարրերի պարբեր. համակարգի I խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 29, ա. զ.՝ 63,546: Կարմիր, թարմ կտրվածքում՝ վարդագույն, փափուկ մետաղ է, խտ.՝ 8,92 *գ/սմ*^{3}, $t_{հալ.}$՝ 1083,4°C: Ունի մեծ ջերմա– և էլեկտրահաղորդականություն (գիջում է միայն արծաթին): Քիմիապես քիչ ակտիվ է: Չոր օդում չի օքսիդանում, իսկ խոնավության առկայությամբ պատվում է հիմնային կարբոնատի՝ $Cu_2CO_3(OH)_2$–ի շերտով: Կարևոր միներալներն են բոռնիտը, խալկոպիրիտը, խալկոզինը, կովելինը, մալաքիտը, ազուրիտը: Հանդիպում է նաև բնածին Պ.: Կիրառում են հիմնականում էլ. հաղորդալարեր, մալուխներ, էլեկտրահպակներ, ջերմափոխանակիչներ պատրաստելու համար: Բժշկության մեջ օգտագործում են Պ–ի սուլֆատը, նիտրատը՝ որպես հականեխիչ և տրախոմայի ու շաղկապենաբորբի բուժման միջոց: Քանակի 30–40 %–ը օգտագործում են համաձուլվածքներ պատրաստելու համար:

ՊՂՆՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, մետաղագործ. արհեստ: Սաղմերն ի հայտ են եկել դեռևս Էնեոլիթում (Հայկ. լ–աշխարհում՝ մ. թ. ա. V–IV, մասամբ՝ III հզ–ամյակներ): XII–XIII դդ–ում Պ–յան որոշ ճյուղեր (կաթսայագործություն, աշտանակագործություն, ջահագործություն, զարդագործություն ևն) հասել են կիրառ–գեղ., դեկորատիվ արվ–ի մակարդակի: Որպես առավելապես քաղաք. արհեստ՝ տարածվել է Կարինում, Երևան, Ախալքալաք, Ախալցխա, Նախիջևան, Թիֆլիս, Կարս, Շուշի ևն ք–ներում: Ներկայում Պ–յան վարպետությունն ու ավանդույթները կիրառվում են կենցաղ., կիրառ., դեկորատիվ առարկաների, հուշանվերների արտադր–յան, իսկ Պ–յան ժող. ավանդույթները՝ պղնձի արդ–յան մեջ:

ՊՂՆՁԱՄՄԱԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, գունավոր մետաղագործության ճյուղ. ներառում է զուտ պղնձի, պղինձ ու մոլիբդեն պարունակող հանքանյութի արդյունահանումը, հարստացումը, պղնձի և մոլիբդենի մետաղագործ. մշակումը: ՀՀ–ում գործում են Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը, Ալավերդու պղնձաձուլական կոմբինատը, Կապանի, Քաջարանի, Ախթալայի ֆաբրիկաները:

ՊՂՆՁԻ ԿԱՐԲՈՆԱՏ, $CuC0_3$, պղնձի ածխաթթվական աղը: Ջր. լուծույթներից բյուրեղանում են հիմնային կարբոնատները՝ $CuCO_3 \cdot Cu(OH)_2$ մալաքիտ միներալի մուգ կանաչ բյուրեղները, $2CuCO_3 \cdot Cu(OH)_2$ ազուրիտ միներալի կապույտ բյուրեղները:

ՊՂՆՁԻ ՀԱՆՔԱՆՅՈՒԹԵՐ, արդ. միներալներ՝ բնածին պղինձ, բոռնիտ, քալկոպիրիտ, խալկոզին, կովելին, կուպրիտ, բրոշանտիտ ևն: Հիմն. երկրբ. արդ. տիպի հանքավայրեր են պղնձապորփյուրայինը (Cu–ի պաշարների մինչև 70 %–ը), պղնձաբեր ավազաքարայինը և թերթաքարայինը (մինչև 20 %): Հաստատված համաշխ. պաշարները՝ մոտ 0,6 մլրդ *տ* Cu: Գլխ. արտահանող երկրներն են Չիլին, ԱՄՆ, Պերուն, Ավստրալիան, Ինդոնեզիան, Չինաստանը: Պ. հ. կան նաև ՀՀ–ում (Շամլուղ, Ալավերդի ևն):

ՊՂՆՁԻ ՄՈՒԼՖԱՏ, $CuSO_4$, ծծմբական թթվի պղնձի աղը: Անգույն բյուրեղներ են: Լուծվում են ջրում: Ջր. լուծույթներից բյուրեղանում է $CuSO_4 \cdot 5H_2O$ պղնձարջասպը՝ պղնձի սուլֆատի բյուրեղահիդրատը: Վառ կապույտ բյուրեղներ են: Բնության մեջ հանդիպող խալկանթիտ միներալն է: Օգտագործում են հանք. ներկեր պատրաստելու, գղտ. վնասատուների, բույսերի հիվանդությունների դեմ պայքարելու, հացահատիկն ախտահանելու, կաշին մշակելու, գալվան. բջիջներ պատրաստելու համար:

ՊՂՆՁԻ ՄՈՒԼՖԻԴՆԵՐ, Cu_2S և CuS: Սև բյուրեղներ են, չեն լուծվում ջրում: Բնության մեջ հանդիպում են խալկոզին՝ Cu_2S, և կովելին՝ CuS, միներալների ձևով: Հումք են պղնձի և պղնձի սուլֆատի արտադրյան համար:

ՊՂՆՁԻ ՕՔՍԻԴՆԵՐ, պղնձի միացությունները թթվածնի հետ: **Պղնձի (II) օքսիդը**՝ CuO, սև բյուրեղ. նյութ է: Բնության մեջ հանդիպում է տենորիտ միներալի ձևով: Օգտագործում են կանաչ և կապույտ ապակի և արծն, նոնաքարե կարմիր ապակի ստանալու, գալվան. չոր բջիջներ պատրաստելու, օրգ. վերլուծության համար և բժշկության մեջ (քսուքներ): **Պղնձի (I) ենթօքսիդը**՝ Cu_2O, կարմրաշագանակագույն բյուրեղ. նյութ է: Առաջացնում է կուպրիտ միներալը: Օգտագործում են ապակին և արծնը գունավորելու, գղտ. վնասատուների դեմ պայքարի համար: **Պղնձի (III) օքսիդը**՝ Cu_2O_3, կարմիր փոշի է, օքսիդիչ: Ստացվել է նաև **պղնձի գենօքսիդը**, որն անկայուն նյութ է և օքսիդիչ:

ՊՂՆՁԻ–ՔԱՄՐԻ ԴԱՐ, պղնձաքարի դար, Էնեոլիթ, ***նոր քարի դարից*** (Էնեոլիթ) ***բրոնզի դարին*** անցնելու ժամանակաշրջանը: Ուսումնասիրողների մեծ մասը համարում է ոչ թե նախնադար. պատմության առանձին ժամանակահատված, այլ բրոնզի դարի նախն. շրջան: Տարբեր տարածքներում Պ–ք. դ. թվագրվում է մ. թ. ա. VI–V հզ–ամյակներից մինչև մ. թ. ա. II հզ–ամյակի վերջը: Հայկ. լ–աշխարհի Պ–ք. դ–յան բնակատեղիները պատկանում են հիմնականում մ. թ. ա. V–IV, մասամբ՝ III հզ–ամյակներին:

ՊՂՆՁՈՁ (Coronella austriaca), լորտուների ընտանիքի ոչ թունավոր օձ: Երկ.՝ մինչև 65 *սմ*: Ապրում է Եվրոպայում և Արմ. Ասիայում: Երբեմն Պ. շփոթում են թունավոր սովոր. իժի հետ, որը գունավորմամբ նման է Պ–ին:

ՊՂՊԵՂԱՍՈՒՆԿ (Lactarius piperatus), բազիդիավոր սնկերի կաթնասնկերի ցեղի ներկայացուցիչ: ՀՀ–ում հազվադեպ հանդիպում է հս–արլ. մարզերի սաղարթավոր և խառնանտառներում, հողի վրա՝ ամոնանը (1100–1400 *մ* բարձր–ներում): Պտղամիսն ամուր է, թիթեղները խիտ են, սպիտակ, իջնում են ոտիկի վրա, հաճախ՝ կաթնահյութի կաթիլներով: Ոտիկը (երկ.՝ 3–7 *սմ*, հաստ.՝ 2–3 *սմ*) գլանաձև է, երբեմն՝ հիմքի մոտ նեղացած, ամուր, սպիտակ, հարթ: Ուտելի է. օգտագործում են միայն թթու դրած:

ՊՂՏՈՐ ՄԻՋԱՎԱՅՐ, անհամասեռ միջավայր, որում լույսը տարածվում է զգալի ցրմամբ, ինչն ազդում է նրա տարածման պայմանների վրա, որի հետևանքով խախտվում է միջավայրի թափանցիկությունը: Միջավայրում լույսի ցրումը պայմանավորված է նրա օպտիկ. անհամասեռությամբ (բացահայտել է Լ. Ի. *Մանդելշտամը* 1907–ին):

ՊՂՏՈՐԱՉԱՓ, **նեֆելոմետր** (< հուն. nephele – ամպ և ...*մետր*), հեղուկների և գազերի պղտորության աստիճանի չափման օպտիկ. սարք՝ ըստ նրանց լույսի ցրման ինտենսիվության: Պ–ի աշխ–ը հիմնված է միջավայրով ցրված լույսի և չափանմուշի (մուգ ապակի ևն) ցրման ինտենսիվությունների համադրման վրա: Պ–ով հնարավոր է որոշել մասնիկների մեծությունը, ձևը, կոնցենտրացիան, գազերի, հեղուկների և թափանցիկ պինդ նյութերի պղտորության աստիճանը: Կիրառում են քիմիայում, օդերևութաբանության, կենսբ–յան մեջ ևն:

ՊՅԱՌՆՈՒ, գետ Էստոնիայում: Երկ.՝ 144 *կմ*, ավազանը՝ 6910 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը ստորին հոսանքում՝ 46,5 *մ*^{3}*/վ*: Թափվում է Բալթիկ ծովի Ռիգայի ծոցը: Ափին է համանուն քաղաքը:

ՊՅԱՍԻՆԱ, գետ Արլ. Սիբիրի հս–արմ–ում: Երկ.՝ 818 *կմ*, ավազանը՝ 182 *կմ*^{2}, ջրի ծախսը՝ 2600 *մ*^{3}*/վ*: Սկիզբ է առնում Պյասինո լճից, թափվում Կարայի ծով: Նավարկելի է:

ՊՅԱՎԿՈ Վլադիսլավ Իվանովիչ (ծ. 1941), ռուս. երգիչ (տենոր): ԽՍՀՄ ժող. արտիստ (1983): 1965–89–ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մեներգիչ (Մանրիկո, Ռադամես՝ Ջ. Վերդիի «Աիդա», «Տրուբադուր», Կավարադոսի՝ Ջ. Պուչչինիի «Տոսկա», ևն): Մեներգիչների միջազգ. մրցույթի 3–րդ [1969, Վերվիեի (Բելգիա)], Պ. Ի. Չայկովսկու անվ. միջազգ. մրցույթի 2–րդ (1970, Մոսկվա) մրց–ներ:

ՊՅԱՏԱԿՈՎ, Գեորգի Լեոնիդովիչ (1890–1937), խորհրդ. կուս. և պետ. գործիչ: 1917–1918–ին՝ Ժող. բանկի կոմիսար, Ուկրաինայի Ժամանակավոր բանվորագյուղաց. կառ–յան նախագահ: 1929–ից՝ ԽՍՀՄ պետբանկի վարչության նախագահ: 1934–36–ին՝ ԽՍՀՄ ծանր արդ–յան ժողկոմի 1–ին տեղակալ: Անհիմն բռնադատվել է, գնդակահարվել:

ՊՅԱՏԻԳՈՐՍԿ, ք. (1830–ից) ՌԴ Ստավրոպոլի երկրամասում, Հյուսիսկովկաս. դաշն. օկրուգի կենտրոնը: Բն.՝ 141,1 հզ. (2010): Ջերմուկացեխաբուժ. առողջարան է՝ Կովկասի Միներալնիե Վոդիի խմբում՝ Պոդկումոկ գետի ափին՝ Մաշուկ և Գորյաչայա լ–ների լանջերին: Կան 2 բուհ, թատրոն, թանգարան, Մ. Յ. Լերմոնտովի թանգարան–արգելոցը: Կյանքի վերջին տարիներին Մ. Յ. Լերմոնտովն ապրել է Պ–ում և 1841–ին մերձակա Մաշուկ լ–ան ստորոտին սպանվել մենամարտի ժամանակ:

Պ–ում դեռևս XIX դ–ի 2–րդ կեսին գոյություն է ունեցել հայկ. համայնք, կառուցվել է Սբ Թարգմանչաց հայկ. եկեղեցին:

1913–ին Պ–ում ապրել է 1700 հայ, գործել են հայկ. տարր. դպրոցներ: ԱՀՊ–ի տարիներին քաղաքի հայ բնակչությունն ավելացել է ի հաշիվ Արմ. Հայաստանից և Այսրկովկասից եկած փախստականների: 1918–ին լույս է տեսել «Լրաբեր» հայ. թերթը, իսկ 1919–20–ին՝ գր–գեղ. «Ալիք» ժող–ը: Բացվել են հայկ. նոր դպրոցներ, աշխուժացել է թատեր. կյանքը: Սակայն 1930–ական թթ–ին ազգ. կյանքն աստիճանաբար մարել է:

1980–ական թթ–ի վերջ–1990–ական թթ–ի սկզբին հայկ. համայնքը վերականգնվել է: Պ–ում ստեղծվել է Վահան Տերյանի անվան մշակույթի ընկ–ը: Գործում է Սբ Սարգիս հայկ. եկեղեցին (1992): 1992–93–ին հրատարակվել է ՀԱԵ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի «Խաչքար» թերթը: 1995–ից լույս է տեսնում «Համայնք» պատմամշակութ. հանդեսը (ռուս.), 1997–ից՝ «Արմյանսկի վեստնիկ» (ռուս.) թերթը: Ներկայում հայերի թիվը շուրջ 35–40 հզ. է:

ՊՅԱՏՆԻՑԿԻ Միտրոֆան Եֆիմովիչ (1864–1927), ռուս. հավաքորդ, երգիչ: ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1925): Հանդես է եկել ռուս. ժող. երգերի կատարումով, եղել ռուս. ժող. երգչախմբի (1910, 1927–ից՝ Պ–ի անվ.) հիմնադիրն ու գեղ. ղեկ–ը:

ՊՅԱՍՏՈՎ Վասիլի Ստեպանովիչ (1823/24–1892), ռուս մետաղագործ: Հայտնագործել է (1859) գլոցմամբ զրահասալերի արտադր–յան բարձրարտադրող. եղանակ՝ նրանց մակերեսների քիմիաեռնոլոգ. ամրացմամբ:

ՊՅԱՏՍ (Päts) Կոնստանտին (1874–1956), Էստոնացի պետ. և քաղ. գործիչ: 1938–40–ին՝ Էստոնիայի նախագահ: 1918–19–ին գլխավորել է Էստոնիայի ժամանակավոր կառ–յունը և ռազմ. նախ–յունը: 1919–34–ին՝ ագրար. կուս–յան առաջնորդ:

ՊՅԱՐՏ (Pärt) Արվո (ծ. 1935), Էստոնացի կոմպոզիտոր: 1981–ից՝ Բեռլինում: Հեղինակ է սիմֆոնիայի, թավջութակի և 2 ջութակի կոնցերտների (նվագախմբի հետ), «Չարչարանքներ ըստ Հովհաննու» (1982), «Te Deum» (1984–85, 2–րդ խմբագրությունը՝ 1992), «Բեռլինյան մեսսա»–ի (1992), կամեր–գործիք. և այլ երկերի:

ՊՅՈՏՐ (աշխարհիկ անունը՝ Պյոտր Սիմեոնովիչ Մոգիլա, 1596/97–1647), Կիևի մետրոպոլիտ՝ 1632–ից, ՌՈՒԵ սուրբ, Կիև–Պեչորյան մայրավանքի (հետագայում՝ Կիև–Մոգիլյան ակադ.) վանահայր: Հեղինակ է «Ուղղափառ խոստովանություն» կատեխիզիսի, նաև քարոզների: Հրատարակել է Ուսուցող. կտակարան (1616), «Անֆոլոգիոն» (աղոթքներ և խրատներ, 1636):

ՊՅՈՐՍԵԼ (Purcell) Հենրի (մոտ 1659–1695), անգլիացի կոմպոզիտոր: Անգլ. առաջին օպերայի՝ «Դիդոնե և Էնեաս»–ի (1689) հեղինակը: Պ–ի երաժշտաբեմ. երկերը (շուրջ 50) անվանել են «կիսաօպերաներ» (semi opera): Հեղինակ է նաև կամեր–գործիք. անսամբլների, երգերի, խմբերգերի, երգեհոն. կոմպոզիցիաների և այլ գործերի:

ՊՅՈՒԶՈ (Puzo) Մարիո (1920–1999), իտալացի արձակագիր, սցենարիստ: Հեղինակ է «Կնքահայրը» (1969, հայ.՝ հ. 1–2, 1994), «Միցիլիացին» (1984) վեպերի, որտեղ ներկայացրել է իտալա–ամերիկ. մաֆիայի պատմությունը:

ՊՅՈՒԹԱԳՈՐԱՍ (Pythagoras) **Հռեգիոնցի**, մ. թ. ա. V դ–ի 1–ին կեսի հույն քանդ.: Ստեղծագործել է Հռեգիոնում (Հվ. Իտալիա): Աշխ–ները (բրոնզե) չեն պահպանվել: Կերտել է հաղթող աթլետների քանդակներ («Կաղ Փիլոկտետես», «Հակինթոս», «Էթեոկլես և Պոլինիկես»):

ՊՅՈՒԹԱԳՈՐԱՍ (Pythagoras) **Սամոսացի** (մ. թ. ա. մոտ 570–մոտ 500), հույն փիլ. և մաթեմատիկոս, կրոն., քաղ. գործիչ: Պյութագորասականության հիմնադիրը: Մոտ 532–ին հաստատվել է Հվ. Իտալիայի Կրոտոն ք–ում: Պ–ին է վերագրվում զույգ և կենտ, հասարակ, բաղադրյալ և կատարյալ թվերի մասին ուսմունքը, նաև *Պյութագորասի թեորեմի* ապացուցումը: Հայ իրականության մեջ Պ–ի ուսմունքի վերաբերյալ տեղեկությունները տարածվել են *Դավիթ Անհաղթի* «Սահմանք իմաստասիրութեան» երկի միջոցով:

ՊՅՈՒԹԱԳՈՐԱՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, կրոնափիլ. ուսմունք Հին Հունաստանում մ. թ. ա. VI–IV դդ–ում: Հիմնադիրը՝ *Պյութագորաս*: Պ–ի հիմքում թվի՝ որպես գոյություն ունեցող ամեն ինչի նախասկզբի պատկերացումն է: Թվային փոխհարաբերակցությունները Տիեզերքի ներդաշնակության աղբյուրն են, որի կառուցվածքը Պ–յան մեջ ըմբռնվել է որպես ֆիզ–երկրաչափաձայնաբան. միասնություն (ոլորտների ներդաշնակություն): Պ. մեծ ավանդ է ունեցել մաթ–ում, աստղագիտ–յան (Երկրի գնդաձևության մասին պնդումը) և երաժշտ. ձայնաբանության մեջ: *Օրփևոսականների* հետ քարոզել է հոգիների վերարնակեցումների մասին գաղափարներ (մետեմփսիխոզ) և մշակել պաշտամունք. արգելքների բարդ համակարգ (պյութագորաս. կենսաձև):

ՊՅՈՒԹԱԳՈՐԱՍԻ ԹԵՈՐԵՄ, *Պյութագորասին* վերագրվող երկրչփ. թեորեմ. ուղղանկյուն եռանկյան ներքնաձիգի քառակուսին հավասար է էջերի քառակուսիների գումարին:

ՊՅՈՒԹԱԳՈՐԱՍՅԱՆ ԹՎԵՐ, բնական թվերի այնպիսի եռյակներ, որոնց համեմատական (կամ հավասար) կողմեր ունեցող եռանկյունն ուղղանկյուն է, օր.՝ 3, 4, 5:

ՊՅՈՒԹԵԱԿԱՆ ԽԱՂԵՐ (լատ.՝ Pythia), համահուն. տոնակատարություններ և մրցումներ Հին Հունաստանում (երաժշտ. և մարզ.). անցկացվել են (8 տարին՝ 1, մ. թ. ա. VI դ–ից՝ 4 տարին 1 անգամ) Դելֆիքում՝ Ապոլոնի տաճարի մոտ, իրենց նշանակությամբ օլիմպ. խաղերից հետո 2–րդն էին:

ՊՅՈՒԺԵ (Puget) Պիեռ (1620–1694), ֆրանսիացի քանդ., գեղանկարիչ, ճարտ.: Քանդակներն առանձնանում են կերպարների ֆիզ. լարվածության ու ապրումների կենս. հավաստիությամբ (Տուլոնի ռատուշայի ճակատի ատլանտները, 1656–57, «Պերսևս և Անդրոմեդա», 1683–84):

ՊՅՈՒՋԵՏ ՍԱՈՒՆԴ (Puget Sound), ծոց Խաղաղ օվկ–ում՝ ԱՄՆ Վաշինգտոնի նահագ–ի ափերի մոտ: Երկ.՝ 126 *կմ*, լայն.՝ 60 *կմ*, խոր.՝ մինչև 245 *մ*: Օվկ–ի կողմից դեպի ծոց մուտքը շրջափակված է Վանկուվեր կղզով: Նվինգստ–ները՝ Սիեթլ, Տակոմա, Բրեմերտոնմ:

ՊՅՈՒՌՈՍ, **Պյուռհոս** (Pyrrhus Epirotes, մ. թ. ա. 319–273/272), *Էպիրոսի* թագավոր՝ 307–302 և 296–273–ին, զորավար: 288–287–ին պարտության է մատնել Մակեդոնիայի թագավոր Դեմետրիոս I Պոլիորկետեսին և 7 ամիս իշխել Մակեդոնիայում: 279–ին Օսկուլում ք–ի մոտ Պ. մեծ զոհերի գնով հաղթել է (հայտնի է **«պյուռոսյան հաղթանակ»** անունով, փխբ. իմաստով՝ անիմաստ, անօգուտ հաղթանակ) հռոմեացիներին: Զոհվել է մարտում՝ Արգոս ք–ի պաշարման ժամանակ:

ՊՅՈՒՍԱ, գետ ՌԴ Պսկովի և Լենինգրադի մարզերում, Նարվայի աջ վտակը: Երկ.՝ 281 *կմ*, ավազանը՝ 6550 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 50 *մ*^{3}/*վ*: Ափին կան բազմաթիվ պատմաճարտ. հուշարձաններ:

ՊՅՈՒՎԻ ԴԸ ՇԱՎԱՆ (Pavis de Chavannes) Պիեռ (1824–1898), ֆրանսիացի գեղանկարիչ: Ստեղծել է ընդգծված հարթությամբ, պայմանականությամբ, մեղմ գույն. գամմայով հովվերգ. պաննոներ («Սուրբ Ժենևևայի կյանքը», 1874–98, «Մուսաներ», 1893–95, ևն):

ՊՅՈՒՐԱ (Piura), ք. Պերուի հս–արմ–ում՝ *Պանամերիկյան ճանուղու* վրա: Համանուն դեպարտամենտի կենտրոնը: Բն.՝ 394,5 հզ. (2010): Ունի օդանավակայան, համալսարաններ: Երկրի հս. մասի տնտ., նաև բամբակի առևտրի կենտրոն է:

ՊՆԱԿԻՍ, տվյալների կրիչ, նախատեսվում է տեղեկույթի գրանցման և (կամ) վերարտադրման համար՝ սևեռված լազեր. ճառագայթման միջոցով: Կազմված է կարծր հիմքից (սովորաբար՝ թափանցիկ), որի վրա նստեցված են լուսազգայուն կամ անդրադարձնող շերտը և լրացուցիչ (ադհեզիային, պաշտպանիչ ևն) շերտեր: Պ–ներ են տեսասկավառակները, խտասալիկները: Գրանցման խտ.՝ ավելի քան 10^8 *բիթ/սմ*^{2}:

ՊՆԴԱՅՈՒՄ, 1. հեղուկի անցումը պինդ բյուրեղ. վիճակի (առաջին կարգի ֆազ. անցում): Երբեմն Պ. են անվանում նաև անցումը պինդ ամորֆ վիճակի: 2. Ռեակցիոնունակ օլիգոմերների ոչ դարձելի անցումը չլուծվող և չհալվող պոլիմերների:

ՊՆԴՈՒԿԵՆԻ (Cōrylus), կնձազգիների ընտանիքի տխլենի ցեղի թուփ կամ ծառ: Խոշորապտուղ և մշակովի ձևը սովոր. տխլենին է: Մշակում են Հս. և Հվ. Եվրոպայում, Թուրքիայում, ԱՄՆ–ում ևն: Պտղի յուղայնությունը՝ 70 %:

ՊՆԵՎՄԱՇԱՐԺԱԲԵՐ, սարքերի համախումբ, որոնք նախատեսված են սեղմած օդի էներգիայի հաշվին մեքենաներ և մեքենամասեր գործարկելու համար:

ՊՆԵՎՄԱՏԻԿ ՋԵՆՔ, **գազաճնշական զենք**, դյուրակիր, թեթև զենք, որից գնդակը դուրս է թռչում սեղմած օդի կամ այլ գազի ճնշման ուժով: 1–ին Պ. զ. ի հայտ է եկել 1430–ին: Կիրառվել է որպես որսորդ., իսկ XVIII դ–ի վերջին՝ նաև մարտ. զենք (Ավստրիա, Ֆրանսիա ևն): XIX դ–ի սկզբից հիմնականում կիրառվում է որպես սպորտ. ազդանշան. զենք:

ՊՆԵՎՄԱՏԻԿ ՇԱՐԺԻՉ, սեղմած օդի էներգիան մեխ. աշխ–ի փոխակերպող մեքենա: Տարբերում են ծավալ. (մխոցավոր և պտուտակ.) և տուրբին. Պ. շ–ներ: Հիմնականում կիրառում են արդ–յան մեջ խոնավ և պայթունավտանգ տեղերում աշխատող ձեռքի մեքենաներում (օր.՝ գայլիկոն):

ՊՆԵՎՄԱՏԻԿ ՏՐԱՆՍՊՈՐՏ, օդաճնշ. տրանսպորտ, սորուն հատիկավոր բեռներ խողովակաշարով օդի կամ գազի ճնշմամբ տեղափոխման համակարգ: Բեռը տեղափոխվում է օդի (կամ այլ գազի) շիթում կախված վիճակում կամ կոնտեյներով՝ ճնշման տարբերության ազդեցությամբ: ՀՀ ԳԱԱ ՕՔՒ–ում, ապա ԵՊԻ–ում (Արծրունի *Գասպարյանի* ղեկավարությամբ) մշակել են նյութի «խիտ շերտով» տեղափոխման արդյունավետ եղանակ:

ՊՆԵՎՄԱՏՈՖՈՐՆԵՐ, 1. արևադարձ. բույսերի վերգետնյա արմատներ: Օդ են մատակարարում թթվածնասակավ ճահ–

ճացած հողերում կամ ծովերի ափերին՝ մակընթացության գոտում աճող բույսերի ստորգետնյա մասերին:

ՊՆԵՎՄՈՍԿՏՈՄԱՏԻԿԱ, 1. ԱԿՀ-երի կառուցման տեխ. միջոցների համալիր, որոնցում տեղեկույթը ներկայացվում և փոխանցվում է պնևմոազդանշանների [ճնշման տատանումներ կամ օդի (գազի) ծախսի ձևով: Պ. հիմնականում կիրառվում է քիմ., գազա- և նավթավերամշակման արդ-յան տեխնոլոգ. շարժընթացների կառավարման համակարգերում, մեքենաշինության և գղտ-յան մեջ են: 2. Տեխ. գիտակարգ, որի ուսումնասիրության առարկան ավտոմատացման տեխ. միջոցների այդ տեսակն է:

ՊՆԵՎՄՈԳՐԱՖԻԱ, (< հուն. pneuma – շնչառություն և ...*գրաֆիա*), կրծքավանդակի շնչառ. շարժումների գրանցումը հատուկ սարքի՝ **պնևմոգրաֆի** օգնությամբ: Կիրառվում է շնչառ. շարժումների բնույթի, արտաքին շնչառության կարգավորման և տարբեր հիվանդությունների ժամանակ նրա խանգարումների մասին տեղեկություններ ստանալու համար:

ՊՆԵՎՄՈԹՈՐԱՔՍ (< հուն. pneuma – շունչ, օդ և torax – կուրծք), օդի կամ գազի կուտակումը կրծքամզի խոռոչում: Ինքնաբեր (սպոնտան) Պ. առաջանում է թոքաքրտինկների պատռվելու (տուբերկուլոզ, թոքափքանք), վնասվածք. Պ.՝ կրծքավանդակի վնասվածքների դեպքերում: Արհեստ. Պ. (հատուկ ասեղով օդի կամ գազի ներարկում կրծքամզի խոռոչ) կիրառվում է տուբերկուլոզի բուժման համար, առաջացնում է հիվանդ թոքի ճնշում և կավեռնայի անկում:

ՊՆԵՎՄՈԿՈԿԵՐ (< հուն. pneumon – թոքեր և *կոկեր*), ստրեպտոկոկեր սեռի գնդաձև բակտերիաներ: Առաջացնում են մարդու և կենդանիների շնչառ. օրգանների հիվանդություններ:

ՊՆԵՎՄՈՀԱՐՎԱԾԻՉ, հորատող օդաճնշ. (պնևմատիկ) հարված. մեքենա, իջեցվում է հորատանցք, օդը մատուցվում է դրսից՝ խողովակներով: Կիրառվում է պայթյուն. հորատանցքերում (տրամագիծը՝ 100–200 *մմ*, խոր.՝ մինչև 50 *մ*) և լեռնապարների խոր նավթա-, գազա- և հանքահետախուզ. հանքախորշերում:

ՊՆԵՎՄՈՆԻԱ, տես *Թոքաբորբ*:

ՊՆԵՎՄՈՆԻԿԱ, *պնևմոավտոմատիկայի* բաժին. ընդգրկում է այն ավտոմատ կառավարման սարքերի ուսումնասիրությունը, մշակումն ու օգտագործումը, որոնցում տեղեկույթի փոխանցումը, ձևափոխումն ու ներկայացումը հիմնված են օդաշիթերի փոխազդեցության, օդ. հոսքերի արագության փոփոխության և այլ աերոդինամիկ. երևույթների վրա:

ՊՆԵՎՄՈՍԿԼԵՐՈԶ (< հուն. pneumon – թոքեր և *սկլերոզ*), շարակց. հյուսվածքի աճումը թոքերում, որն ուղեկցվում է քրոնիկ. բրոնխաբորբով և թոքաբորբով:

ՊՆԵՎՄՈՔԻՄԻԱ, (< հուն. pneuma – շունչ, օդ և *քիմիա*), գազերի քիմիայի անվանումը XVIII դ–ի վերջեր–XIX դ–ի սկիզբը: Ընդգրկել է գազերի քիմ. հետազոտության վաղ շրջանը, երբ հայտնագործվել է գազի ծավալի և ճնշման կապն արտահայտող օրենքը, ստացվել են բազմաթիվ նոր գազ. նյութեր՝ CO_2 (Ջ. Բլեկ), H_2 (Հ. Կավենդիշ), N_2 (Դ. Ռեզերֆորդ), NO, CO, SO_2 (Ջ. Պրիստլի), O_2, Cl_2, SiF_4 (Կ. Շելե) ևն:

ՊՆՈՄՊԵՆ, Կամբոջայի մայրաքաղաքը՝ Տոնլեսաանի ափին (նրա մեջ Մեկոնգ գետի թափման տեղում): Բն.՝ 1,5 մլն (2010): Գետ. նավհնգստ է: Գլխ. տրանսպորտ. հանգույցը օդանավակայանն է: Ունի 3 համալսարան, Ազգ. թանգարան: Հիմնադրվել է XIV դ–ում: XV դ–ից բազմիցս եղել է երկրի մայրաքաղաքը (1866–1993–ին՝ ֆրանս. Կամբոջա տիրույթի վարչ. կենտրոնը): Պատմաճարտ. հուշարձաններն են՝ ստուպայով Պնոմ վանքը (1434), XIX–XX դդ–ի կառույցները. Թագավոր. պալատի համալիրը, «Արծաթե պագոդան», Անկախության հուշարձանները:

ՊՇԵՆԻՅԻՆ Նիկոլայ Կոնստանտինովիչ (1891–1961), ռուս. քիմիկոս–անօրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1953): Աշխ-ները վերաբերում են պլատին. մետաղների կոմպլեքս. միացություններին: Աշակել է մաքուր իրիդիում ստանալու եղանակը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1946):

ՊՇԻԲԻՇԵՎՍԿԻ (Przybyszewski) Ստանիսլավ (1868–1927), լեհ գրող: Գրել է նաև գերմ.: Հեղինակ է «Հոգեհանգստյան պատարագ» (1893), «Սատանայի զավակները» (1897), «Homo sapiens» (1895–98) վեպերի, «Անհատի հոգեբանության մասին» (հ. 1, «Շոպեն և Նիցշե», հ. 2, «Օ. Հանսոն», 1892) գրաքննադատ. էսսեի, «Երջանկության համար» (1900, հայ.՝ 1907), «Հյուրեր» (1901), «Ձյուն» (1903) և այլ դրամաների:

ՊՈ (Poe) Էդգար Ալան (1809–1849), ամերիկացի գրող, քննադատ: Դետեկտիվ ժանրի ու «սարսափի նովելի» հիմնադիրն է և գիտաֆանտաստիկ ժանրի սկզբնավորողներից համաշխ. գրկ-յան մեջ: Հեղինակ է «Թամերլան և այլ բանաստեղծություններ» (1827), «Գրոտեսկներ և արաբանախշեր» (1840), «Ագռավ և այլ բանաստեղծություններ» (1845) չափածո գործերի ժող-ների, «Ձեռագիրը շշի միջից» (1833), «Արթուր Գորդոն Պիմի արկածների պատմությունը» (1838), «Սև կատուն» (1843), «Այլասերվածության դևը» (1844), «Ջրհորը և ճոճանակը» (1843) և այլ պատմվածքների, «Սպանություն Մորգ փողոցում» (1841, հայ.՝ 1975), «Գողացված նամակներ» (1842), «Ոսկե բզեզը» (1843, հայ.՝ 1975), «Մարի Ռոժեի գաղտնիքը» (1845), դետեկտիվ «Դևը զանգակատանը» (1839), «Գործարար մարդը» (1840) երգիծ. և այլ պատմվածքների ժող-ների, «Ստեղծագործության փիլիսոփայություն» (1946), «Բանաստեղծական սկզբունք» (հրտ.՝ 1950) աշխ-ների: Հայ. հրատարակվել է նաև «Մնուրջներ և մղձավանջներ» (1983) պատմվածքների ժող-ը:

ՊՈ (Po), Իտալիայի ամենախոշոր գետը: Երկ.՝ 652 *կմ*, ավազանը՝ մոտ 75 հզ. $կմ^2$, ջրի միջին ծախսը՝ 1460 $մ^3/վ$: Սկիզբ է առնում Կոտյան Ալպերից, հոսում Պադանի հարթավայրով, թափվում է Ադրիատիկ ծով: Ջրերն օգտագործվում են ոռոգման համար, մի շարք վտակների վրա կան ջրէկների կասկադներ: Ջրանցքներով կապված է Լագո Մաջորե, Կոմո, Գարդա լճերի հետ: Նավարկելի է մինչև Պիաչենցա ք–ը: Պ–ի ափերին են Տուրին, Պիաչենցա, Կրեմոնա ք–ները:

ՊՈԲԵԴՈՆՈՍՑԵՎ, Յուրի Ալեքսանդրովիչ (1907–1973), հրթիռ. տեխնիկայի ռուս կոնստրուկտոր: Աշխ-ները վերաբերում են վառոդ. հրթիռների տեսությանը: Մասնակցել է «*Կատյուշաների*» ռեակտիվ արկերի ստեղծմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941):

ՊՈԲԵԴԻՏ, 1. ԽՍՀՄ–ում առաջին (1929) մետաղախեցեգործ. համաձուլվածքը վոլֆրամի մոնոկարբիդից՝ WC (մոտ 90 %), և կոբալտից՝ Co (մոտ 10 %): Ստացվում է փոշեմետաղագործության եղանակով: Պ. տերմինը երբեմն օգտագործում են այլ վոլֆրամակոբալտ. եռակալված կարծր համաձուլվածքների համար: Կիրառվում է հիմնականում կտրող գործիքներ պատրաստելու համար: 2.Պաշտպ. ամոնիումաբորակ. պայթուցիկ նյութեր, որոնք պարունակում են 4–10 % նիտրոեթերներ: Պայթյունի ջերմությունը՝ 3,7 *ՄՋ/կգ*: Ջրակայուն են, թունավոր և զգայուն՝ մեխ. ազդակների հանդեպ: Կիրառում են գազի կամ փոշու տեսակետից վտանգավոր հանքահորերում լեռն. ապարների հորատման համար:

ՊՈԲԵԴՈՆՈՍՑԵՎ, Կոնստանտին Պետրովիչ (1827–1907), ռուս. պետ. գործիչ, իրավաբան: 1880–1905–ին՝ Սինոդի գլխ. դատախազ: Ինքնակալությունն ամրապնդելու մասին 1881–ի ապրիլի 29–ի մանիֆեստի հեղինակը: Իր հայացքները շարադրել է «Մոսկովյան ժողովածու» (1896) գրքում: 1905–ի հոկտ. 17–ի մանիֆեստից հետո պաշտոնաթող է եղել:

ՊՈԳԱՉԻՉ (Pogacic) Վլադիմիր (1919–1999), սերը կինոռեժ., սցենարիստ: Նկարահանել է հիմնականում հոգեբ. կինոդրամաներ («Վերջին օրը», 1951, «Խավաճանություն», 1953, «Մենը և փոքրը», 1957), նաև վավերագր. («Նիկոլայ Տեսլա», 1957, ևն) և այլ ֆիլմեր:

ՊՈԳԵՆԴՈՐՖ (Poggendorff) Յոհան Քրիստիան (1796–1877), գերմանացի ֆիզիկոս: Բեռլինի ԳԱ (1839), Շվեդ. թագավոր. ԳԱ արտ. (1868) և Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. (1868) անդամ: Հրատարակել է «Annalen der Physik und Chemie» (գերմ., 1824–60) ամսագիրը, մատենագիտ. տեղեկատու՝ ճշգրիտ գիտ-յուններով զբաղվող գիտնականների կենսագրություններով: Զբաղվել է էլեկտրաչափման եղանակների մշակման հարցերով: Բացահայտել է հետագայում իր անունով կոչված օպտիկ. պատրանք:

ՊՈԳՎԱԶՈՎ, Բորիս Գեոդորովիչ (1930–2001), ռուս. կենսաքիմիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1990): Ապացուցել է բոլոր էուկարիոտային բջիջներում հիմն. կծկող. սպիտակուցների (ակտինի և միոզինի) առկայությունը, որը հիմք է ծառայել բջջում բջջակմախք. կառուցվածքների բացահայտման համար:

ՊՈԳՈԴԻՆ Միխայիլ Պետրովիչ (1800–1875), ռուս պատմաբան, գրող, լրագրող: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1841): Հրատարակել է Ռուսաստանի պատմության մի շարք կարևոր պատմ. աղբյուրներ, ինչպես նաև «Մոսկովսկի վեստնիկ» (1827–30), «Մոսկվիտյանին» (երկուսն էլ՝ ռուս., 1841–56, Ս. Պ. Շևիրյովի հետ) ամսագրերը:

ՊՈԳՈԴԻՆ (Ստուկալով) Նիկոլայ Ֆեոդորովիչ (1900–1962), ռուս դրամատուրգ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1949): Հեղինակ է «Ազնվականներ» (բեմ.՝ 1934), «Հրացանավոր մարդը» (1937, կինոնկար՝ 1938), «Կրեմլի կուրսանտները» (1940, բեմ.՝ 1942) պիեսների, «Կուբանի կազակները» (1950) կինոսցենարի, «Երրորդ հերոսականը» (1958, բեմ.՝ 1959) եռերգության: ԽՍՀՄ Պետ. (1941, 1951), Լենինյան (1959) մրց-ներ:

ՊՈԳՈԴԻՆ Ռաֆդ Պետրովիչ (1925–1993), ռուս գրող: Հեղինակ է «Աղյուսե կղզիներ...» (1960), «Ջնգզնգոց» (1966), «Քայլ տանիքից» (1968), «Իմ մանկության երկնա-

գույն աքաղաղը» (1983) մանկապատանեկան վիպակների ու պատմվածքների, նաև սցենարների: Հայ. հրատարակվել է «Մրջնայուղ» (1973) պատմվածքների ժող–ը: ՌԽՖՍՀ Պետ. մրց. (1985):

ՊՈԳՈՆՈՖՈՐՆԵՐ, ծով. անողնաշարների տիպ: Թելանման են, երկ.՝ մի քանի *սմ*–ից մինչև 1,5 *մ*: Հայտնի է 150 տեսակ՝ բոլոր ծովերում և օվկ–ներում: Հատակային կենդանիներ են, սովորաբար՝ 3–10 *կմ* խորյան վրա: Ապրում են խիտինային փողակներում: Հայտնաբերվել են XX դ–ում:

ՊՈԳՈՐԵԼՈՎ Ալեքսեյ Վասիլևիչ (1919–2002), ռուս. մաթեմատիկոս: Ուկր. ԽՍՀ ԳԱ (1961), ՌԳԱ (1976) ակադ.: Աշխ–ները վերաբերում են երկրչփ–յանը և թաղանթների մաթ. տեսությանը: ԽՍՀՄ Պետ. (1950), Լենինյան (1962) մրց–ներ:

ՊՈԴԱԳՐԱ (հուն.՝ podagra – բառացի՝ ոտքերի կալանդ), մարդու և կենդանիների նյութափոխանակության խանգարմամբ պայմանավորված (արյան մեջ միզաթթվի պարունակության ավելացում և հողերում, այլ օրգաններում ու հյուսվածքներում նրա աղերի նստվածքագոյացում) քրոնիկ. հիվանդություն: Մարդու Պ. դրսևորվում է հոդաբորբի սուր նոպաներով, հոդերի ձևախախտումով և ֆունկցիաների խանգարմամբ: Պատճառները՝ ժառանգական, շատակերություն (հիմնականում՝ մսի, ալկոհոլի չարաշահում) ևն:

ՊՈԴԱԼԻՐԻՈՒՍ (Iphicliges podalirius), առագաստավորների ընտանիքի թիթեռ: ՀՀ–ում հանդիպում է Արարատյան դաշտում, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում, Երևանի շրջակայքում: Խոշոր և գեղեցիկ թիթեռ է, թևերի բացվածքը՝ 62–72 *սմ*: Հետին թևերն ունեն երկար պոչիկներ: Մնվում է վարդազգիների տերևներով:

ՊՈԴԳԱՅՅԻ, ք. Ուկրաինայում՝ Դնեստրի վտակ Կորոպեցի ափին (Տեռնոպոլի մարզ): Պ. 1590–ին վարձակալել է լեհահայ Յակուբ Սերեբկովիչը: XVII դ–ի կեսին Մոլդովայից և Վալաքիայից տեղափոխված հայերը Պ–ում հիմնադրել են հայկ. գաղթավայր: 1660–ական թթ–ի վերջերից Պ–ի հայերը պայքարել են հռոմ. եկեղեցու հետ բռնի միացման դեմ: Գաղութը գոյատևել է մինչև 1676–ի թուրք. արշավանքը:

ՊՈԴԳՈՐՆԻ Նիկոլայ Վիկտորովիչ (1903–1983), խորհրդ. կուս. և պետ. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1963, 1973): 1957–63–ին՝ Ուկրաինայի կոմկուսի ԿԿ 1–ին, 1963–65–ին՝ ԽՄԿԿ ԿԿ քարտուղար: 1965–77–ին՝ ԽՍՀՄ ԳԽ նախագահության նախագահ:

ՊՈԴԳՈՐԻՑԱ, (1952–92–ին՝ Տիտոգրադ), Չեռնոգորիայի մայրաքաղաքը: Բն.՝ 150,9 հզ. (2011): Երկրի քաղ., տնտ., մշակութ. գլխ. կենտրոնը: Ունի օդանավակայան, համալսարան: Պ–ում պահպանվել են թուրք. ամրոցի մնացորդներ (ավերվել է 1879–ին), մյուս պատմ. կառույցները ոչնչացվել են ԵՊՀ–ի ժամանակ:

ՊՈԴԳՈՒՐՆԻ Իվան Մաքսիմովիչ (1871–1949), ռուս ըմբիշ, կրկեսի դերասան: ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1939): ԽՍՀՄ ս. վ. վ. (1945): Աշխարհի չեմպիոն (1905–08): 1962–ից անցկացվում են Պ–ի հուշամրցաշարեր:

ՊՈԴԵԲՐԱԴ Իրժի (Jiří z Poděbrad, 1420–1471), Չեխիայի թագավոր՝ 1458–ից: Զգտել է ամրապնդել չեխ. պետությունը, նրա անկախությունը, սահմանափակել պապականության խարդավանքները: 1466–ին պապը դատապարտել է որպես հերետիկոսի:

ՊՈԴԿԱՄԵՆՆԱՅԱ ՏՈՒՆԳՈՒՍԿԱ (վերին հոսանքում՝ Կատանգա), գետ Արլ. Սիբիրի արմ–ում, Ենիսեյի աջ վտակը: Երկ.՝ 1865 *կմ*, ավազանը՝ 240 հզ *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1560 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է Բայկիտ գ–ից (571 *կմ*):

ՊՈԴՈԼՍԿ, ք. (1781–ից) ՌԴ Մոսկվայի մարզում՝ Պախրա գետի ափին: Բն.՝ 187,4 հզ. (2010):

ՊՈԴՊՈՄՈԳՈՎ Վալենտին Գեորգիի (1924–1998), նկարիչ: ՀԽՍՀ վաստ. նկարիչ (1967): 1940–ից՝ Հայֆիլմ կինոստուդիայի նկարիչ, 1952–ից՝ բեմադրող նկարիչ («Միրոն է երգում», 1956, «Կարինե», 1967, «Սգավոր ձյունը», 1978, ևն), մուլտիպլիկացիոն ֆիլմերի ռեժ., բեմադրող–նկարիչ («Մի կաթիլ մեղր», 1967, «Փարվանա», 1971, երկուսն էլ՝ ըստ Հ. Թումանյանի) ևն: «Ոզնի» ամսագրի հիմնադիրներից է: Երևան ք–ի առաջին գլխ. նկարիչը (1960–64): Հեղինակ է գեղանկարչ. («Ռեքվիեմ, 1915», 1981, ևն), գրաֆիկ. գործերի: Միջազգ. կփ Մեծ մրց. (1968, Կիև):

ՊՈԴՎՈՅՍԿԻ Նիկոլայ Իլյիչ (1880–1948), խորհրդ. պետ. և ռազմ. գործիչ: 1917–ին՝ Պետրոգրադի ՌՀԴ–ի նախագահ, Հոկտ. զինվ. ապստամբության ղեկ–ներից: 1917–ի նոյեմբր–1918–ի մարտին՝ ՌԽՖՍՀ ռազմ. գործերի ժողկոմ: 1919–23–ին՝ Վսեոբուչի (համընդհ. ռազմ. ուսուցում) և հատուկ նշանակության զորամասերի (ՀՈՆ) պետ:

ՊՈԵԶԻԱ (հուն.՝ poiesis – ստեղծագործություն), գր–գեղ. ստեղծագործության տեսակ: Մինչև XIX դ. Պ. են կոչել ողջ գեղ. գրկ–ը, բանահյուսությունը՝ տարբերելով այն գրավոր խոսքի մյուս տեսակներից (մամուլ, գիտ. գրկ.), արդիական առումով՝ *չափածո* ստեղծագործությունը, ***բանաստեղծություն***: Պ. բնութագրվում է բանաստեղծ. հոգեվիճակի առկայությամբ, ռիթմով, հատուկ ինչերանգով, ինքնատիպ լեզվամտածողությամբ: Պ–ի և արձակ ստեղծագործության սահմանը պայմանական է: Փխբ. առումով՝ «Պ.» են անվանում հատուկ գեղեցկությամբ օժտված կենս. երևույթներ (օր.՝ «ստեղծագործ աշխատանքի Պ.», «գիտական որոնումների Պ.» ևն):

ՊՈԵՄ (հուն.՝ poiema – ստեղծել), 1. չափածո մեծածավալ գործ, որի առանձին մասերը միավորվում են սյուժեի կամ կերպարների ընդհանրությամբ: Պ–ին հատուկ են վիպերգ. և քնար. հատկանիշները՝ սյուժետ. տարրերի և կերպարների առկայություն, պատմող. շարադրանք, նկարագրություն (Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը», «Անուշը», Պ. Սևակի «Անլռելի զանգակատունը», ևն): 2. (Երաժշտ.) XIX–XX դդ–ում ֆանտազիային մոտ քնար. գործիք. պիես (Է. Շոսոն, Ա. Ն. Սկրյաբին, Ա. Խաչատրյան, Ա. Բաբաջանյան և ուր.): Տարբերում են նվագախմբային (Ֆ. Լիստի սիմֆ. Պ–ներ), վոկալ, խմբերգ., վոկալ–գործիք., վոկալ–սիմֆ. (Դ. Դ. Շոստակովիչի «10 պոեմ երգչախմբի համար», Ա. Խաչատրյանի «Վոկալ սիմֆոնիկ պոեմ», ևն) տեսակներ:

ՊՈԵՏԻԿԱ (հուն.՝ poietike – բանաստեղծ. արվ.), գրկ–յան տեսության բաժիններից: Ուսումնասիրում է արձակ և չափածո գեղ. գործերի կառուցվածքը, պատկերավորման և արտահայտչ. միջոցները, ժանր., տաղաչափ. և մյուս առանձնահատկությունները:

ՊՈԶԱՃՅԱՆ Հակոբոս (1808–1883), բառարանագիր: ՎենՄՄ աբբահայր (1855–ից): Միաբանությանը կից Արամյան ընկ–յան (1843–1920) հիմնադիրներից (Ա. Ազատյանի և ուր. հետ): Հեղինակ է «Քերականութիւն իտալական լեզուի» (1836) աշխ–յան, «Համառօտ բառարան ի հայէ ի տաճիկ ի պէտս դպրոցաց» (հ. 1, 1838), «Համառօտ բառարան ի տաճկականէ ի հայ, ի պէտս դպրոցաց» (հ. 2, 1841), «Համառօտ բառարան տաճկերէն–հայերէն» (1858) բառարանների: Կազմել է բազմալեզվյան բառարան (անտիպ է):

ՊՈԶԱՊԱԼՅԱՆ Լուիզա (Եղիայան Անահս) Եղիայի (1936–1998), երգչուհի (սոպրանո): Երգել է «Գուսան» երգչախմբում, 1964–ից՝ Բրյուսելի, 1966–ից՝ Համբուրգի, 1988–ից՝ Շտուտգարտի օպեր. թատրոնների մեներգչուհի (դոննա Աննա, դոննա Էլվիրա՝ Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան», Լեոնորա՝ Զ. Վերդիի «Տրուբադուր», Մարգարիտ՝ Շ. Գունոյի «Ֆաուստ», Միմի՝ Ջ. Պուչչինիի «Բոհեմ», ևն): Կատարել է նաև սոպրանոյի երգամասեր Յ. Ս. Բախի, Լ. վան Բեթհովենի, Զ. Վերդիի, Ա. Դվորժակի և ուր. վոկալ–սիմֆ. երկերում: Համերգ. երկացանկում՝ նաև Կոմիտասի, Մ. Եկմալյանի, Բ. Կանաչյանի, Գ. Ալեմշահի և ուր. գործերից: Զ. Վերդիի անվ. (1961, Իտալիա), Եղիսաբեթ թագուհու անվ. (1962, Բրյուսել), «Վերդիական ձայներ» (1963, Բուսետո, Իտալիա) միջազգ. մրցույթների դափնեկիր:

ՊՈԶԻՏԻՎԻԶՄ (ֆրանս.՝ positivism, < լատ. positivus – դրական), փիլ. ուղղություն, որի հիմքում այն դրույթն է, թե իսկական (պոզիտիվ) գիտելիքը հատուկ գիտ–յունների ընդհանրական արդյունք է: Հիմնադրել է Օ. ***Կոնտը*** (ներմուծել է հասկացությունը) 1830–ական թթ–ին: Տարբերակում են «դասական» Պ. (Է. Լիթրե, Ի. Տեն, Զ. Ս. Միլ, Հ. Սպենսեր, Վ. Վ. Լեսևիչ, Մ. Մ. Տրոցկի և ուր.), էմպիրիոկրիտիցիզմ (մախիզմ) և Պ–ի ժամանակակից ձևը՝ ***նեոպոզիտիվիզմ***: Էական ազդեցություն է թողել հատկապես XIX դ–ի 2–րդ կեսի բնական և հաս. գիտ–յունների մեթոդաբանության վրա:

ՊՈԶԻՏՐՈՆ (< լատ. positivus – դրական և ...***տրոն***) e^+, էլեկտրոնի հակամասնիկը: Կայուն է, բայց նյութում էլեկտրոնի (e^-) հետ միացմամբ ոչնչացման (աննիհիլացման) պատճառով շատ կարճ կյանք ունի: Առաջանում է ***մյուոնների*** տրոհման ժամանակ գամմա–քվանտներից՝ e^+e^- զույգերի առաջացման ընթացքում:

ՊՈԶԻՏՐՈՆ–ԷՄԻՍԻԱՅԻՆ ՇԵՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ, պոզիտրոն–առաքումային շերտագրություն, մարդու և կենդանիների ներքին օրգանների հետազոտման, ախտորոշման ռադիոնուկլիդային եղանակ: Հիմնված է γ–քվանտների գրանցման վրա, որոնք առաջանում են ***պոզիտրոնների*** (գոյանում են օրգանիզմ ներարկված ռադիոնուկլիդի β–քայքայմամբ) և էլեկտրոնների աննիհիլացման հետևանքով: Պ–է. շ–յամբ հնարավոր է հետազոտել նյութափոխանակության ընթացքը, նյութերի տեղաշարժն օրգանիզմում, գեների դրսևորումը ևն: Առավել հեռանկարային է սրտի, գլխուղեղի և ուռուցք. հիվանդությունների ախտորոշման համար:

ՊՈԶԻՏՐՈՆԻՈՒՄ, *էլեկտրոնից* (e^-) և ***պոզիտրոնից*** (e^+) կազմված համակարգ, կառուցվածքով նման է ջրածնի ատոմին. անկայուն է, 10^{-7} կամ 10^{-10} *վ* հետո (համապատասխանաբար՝ մասնիկների հակազուգահեռ և զուգահեռ սպինների

դեպքում) տեղի է ունենում e^+-ի և e^--ի աննիհիլացում:

ՊՈԶՆԱՆ, ք. Լեհաստանի արմ-ում՝ Վարտա գետի ափին, համանուն վոյեվոդության վարչ. կենտրոնը: Բն.՝ 555,1 հզ. (2010): Տրանսպորտ. հանգույց է, ունի օդանավակայան, թատրոններ (այդ թվում՝ օպեր.): Պ-ում անցկացվում է ամենամյա միջազգ. տոնավաճառ: Հայտնի է IX դ-ից, X–XI դդ-ում լեհ. իշխանների նստավայրն էր, 1815-ից՝ Պ-ի մեծ իշխանության կենտրոնը, 1918–19-ին՝ Պ-ի ապստամբությունից հետո՝ վերաստեղծված լեհ. պետության կազմում էր: Պատմաճարտ. հուշարձաններից են գոթ. կոստյոլները (այդ թվում՝ տաճարը, XIII–XV դդ.), Ռատուշան (XIII–XIV դդ., 1550–60-ին վերակառուցվել է Վերածննդի ոճով), առանձնատները (XVI–XXI դդ.):

ՊՈԶՈՅԱՆ, **Պոզոև**, Գեորգի Ավետիքի (1858–մ. թ. անհտ), ռուս. բանակի հրետանու գեն-մայոր (1915): Լևոն և Ռուբեն *Պոզոյանների* եղբայրը: Մասնակցել է 1877–78-ի ռուս-թուրք. պատերազմին: ԱՀՊ-ում, որպես հրետան. բրիգադի հրամ., կռվել է Արմ. ռազմաճակատում: 1918-ից՝ պաշտոնաթող:

Ռուս. կայսրության Սբ Ստանիսլավի (1896), Սբ Աննայի (1901), Սբ Վլադիմիրի (1906) 2-րդ աստիճանի շքանշաններ:

ՊՈԶՈՅԱՆ, **Պոզոև**, Լևոն Ավետիքի (1855–մ. թ.անհտ), ռուս. բանակի հրետանու գեն-լեյտ. (1913, գեն-մայոր՝ 1907-ից): Ռուբեն և Գեորգի *Պոզոյանների* եղբայրը: Մասնակցել է 1877–78-ի ռուս-թուրք., 1904–05-ի ռուս-ճապոն. պատերազմներին: 1910–14-ին՝ Թուրքեստանյան 1-ին բանակ. կորպուսի հրետանու տեսուչ, 1916–18-ին՝ ՋՕ-ի հրետանու պետ:

Ռուս. կայսրության Սբ Վլադիմիրի 3-րդ (1901), Սբ Ստանիսլավի (1914), Սբ Աննայի 1-ին (1915), Սբ Վլադիմիրի 2-րդ (1916) աստիճանների շքանշաններ, «Ոսկե զենք «Խիզախության համար»» (1905):

ՊՈԶՈՅԱՆ, **Պոզոև**, Ռուբեն Ավետիքի (1856–1930-ական թթ.), ռուս. բանակի հրետանու գեն-մայոր (1915): ՀՀ (1918–20) հրետան. զորքերի հիմնադիրներից: Գեորգի և Լևոն *Պոզոյանների* եղբայրը: Մասնակցել է 1877–78-ի ռուս-թուրք. պատերազմին. ԱՀՊ-ին՝ հրետան. բրիգադի հրամ.: 1917-ի Փետր. հեղ-յունից հետո վերադարձել է Կովկաս. ռազմաճակատ, նոյեմբ-ին նշանակվել Հայկ. առանձին բանակ. կորպուսի հրետանու պետ: Ապա ծառայել է ՀՀ ՋՈՒ-ում: Հայաստանի խորհրդայնացումից հետո բանտարկվել է Ոյազանում, ազատվելուց հետո բնակվել (1921) Թիֆլիսում:

Ռուս. կայսրության Սբ Ստանիսլավի (1898), Սբ Աննայի 2-րդ (1902), Սբ Վլադիմիրի 3-րդ (1912) աստիճանների շքանշաններ:

ՊՈԺԱՐՍԿԻ Դմիտրի Միխայլովիչ (1577–1642), ռուս. ռազմ. և պետ. գործիչ, իշխան, բոյար (1613): Ժող. հերոս: Կ. *Մինինի* զինակիցը: Ռեչ Պոսպոլիտայի՝ Ռուսաստան ինտերվենցիայի ժամանակ մասնակցել է (1611) 1-ին աշխարհազորին, 2-րդ աշխարհազորի (1611–12) և ժամանակավոր կառ-յան ղեկ-ներից (1612–13): Կալուգայի (1617–18) և Նովգորոդի (1628–30) վոյեվոդա: 1616–40-ին ղեկավարել է տարբեր *պրիկազներ*:

ՊՈԺԵԼԱ (Požela) Յուրաս (1925–2014), լիտվացի ֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (1984): Սոց. աշխ. հերոս (1985): Աշխ-ները վերաբերում են կիսահաղորդիչների ֆիզիկային և կիսահաղորդչ. էլեկտրոնիկային (տաք էլեկտրոններ, գերարագագործ էլեկտրոն. սարքեր): Լենինյան (1978), ԽՍՀՄ Պետ. (1988) մրց-ներ:

ՊՈԺԵՆՅԱՆ Գրիգորի Միխայլովիչ (1922–2005), հայազգի ռուսագիր բանաստեղծ: Հեղինակ է «Քամին ծովից» (1955), «Ձմեռային տուն» (1975), «Կակաչներ» (1981) և այլ ժող-ների: ՌԽՖՍՀ (1986), ՌԴ (1995) Պետ. մրց-ներ:

ՊՈԼ ՊՈՏ (Սալոթ Սար, Pol Pot, 1928–1998), կամբոջացի քաղ-պետ. գործիչ, Կամպուչիայի ԿԿ գլխ. քարտուղար (1963–79): Կարմիր կիմերներ շարժման առաջնորդ: 1976–79-ին՝ ձախ էքստրեմիստ. Կամպուչիայի վարչապետ (1976–79): Երկրում իրականացրել է սեփ. ժողդ-ի ցեղասպանություն, որի հետևանքով զոհվել է 1–3 մլն մարդ:

ՊՈԼԱՆԻ (Polanyi) Մայքլ (1891–1976), հունգար փիլ. և ֆիզքիմիկոս: Նեոպոզիտիվիզմի հիմնադիրներից: 1933-ից՝ Մեծ Բրիտանիայում: 1940-ական թթ-ից քննադատել է տրամար. պոզիտիվիզմի հիմն. սկզբունքները: 1950-ական թթ-ին մշակել է ոչ հստակ գիտելիքի սկզբունքը («Անհատական գիտելիք», 1958): Քիմ. ռեակցիաների բացարձակ արագության տեսության հիմնադիրներից է: Մշակել է էլեկտրաքիմ. ռեակցիայի մոլ. մոդելը:

ՊՈԼԱՆԻ Ջոն (ծ. 1929), կանադացի ֆիզքիմիկոս: Աշխ-ները վերաբերում են քիմ. փոխարկումների տարր. ակտերին:

Նոբելյան մրց. (1986, *Լ. ի Յանի* և Դ. *Հերշբախի* հետ):

ՊՈԼԱՆՆԿԻ (Polanski) Ռոման (Ռայմունդ Ռոման Լիբլինգ, ծ. 1933), լեհ., ֆրանս., անգլո-ամերիկ. կինոյի ռեժ., սցենարիստ, պրոդյուսեր: Նկարահանել է «Դանակը ջրի մեջ» (1962), «Հակակրանք» (1965), «Փակուղի» (1966), «Մակբեթ» (ըստ Վ. Շեքսպիրի, 1971), «Չինական թաղամաս» (1974), «Ծովահեններ» (1986), «Դառը լուսին» (1992), «Դաշնակահարը» (2002, «Օսկար» մրց., 2003), «Օլիվեր Թվիստ» (2005), «Ուրվականը» (2010) և այլ ֆիլմեր:

ՊՈԼԱՏ (Փոլադ, Փոլատյան) Տիգրան Պետրոսի (1874–1950), գեղանկարիչ: 1888-ից՝ Փարիզում: Աշակերտել է Էդգար *Շահինին*: Հեղինակ է օֆորտների («Փողոց Կահիրեում», «Մահն ու փայտահատը», «Շարպտնի դաշտը», «Ծեր ուռենին», «Պ. Վեռլենի դիմանկարը», մերկ կանանց շարք, ևն), գրքի նկարազարդումների (Ա. Ֆրանսի «Սուրբ Կլարայի ջրհորը», 1904, Ժ. Լաֆոնտենի «Առակները», 1929, ևն):

ՊՈԼԲԻՆ Իվան Սեմյոնովիչ (1905–1945), խորհրդ. օդաչու, ավիացիայի գեն-մայոր (1943): ԽՄ հերոս (1942, 1945-ին՝ հետմահու): Մասնակցել է ճապոն. զորքերի դեմ Խալխին Գոլ գետի շրջանի մարտերին (Մոնղոլիա, 1939): ՀՄՊ-ի ժամանակ՝ գնդի, դիվիզիայի և կորպուսի հրամ., ռմբակոծիչ ավիացիայում կատարել է 157 մարտ. թռիչք: Զոհվել է մարտում:

ՊՈԼԳԱՐ (Polgar) Ալֆրեդ (1873–1955), ավստրիացի հրեա գրող: 1938–49-ին՝ վտարանդի: Հեղինակ է «Գրառումներ լուսանցքում» (1926), «Պատմություններ առանց բարոյախոսության» (1943) նովելների, մանրապատումների և այլ ժող-ների, որտեղ ծաղրել է ֆաշիստ. գաղափարախոսությունը, նաև պիեսների, «Այո և ոչ» (հ. 1–4, 1926–27) գր. և թատեր. թեմաներով քննադատ. նյութերի ժող-ի:

ՊՈԼԳԱՐ (Polgár), հունգար շախմատիստուհի քույրեր, **Ժուժա** (ծ. 1969), **Սոֆյա** (ծ. 1974), **Հուդիթ** (ծ. 1976), կանանց Աշխարհի շախմատ. օլիմպիադաների (1988, 1990) չեմպիոնուհիներ, տղամարդկանց մի շարք միջազգ. մրցաշարերի (1986–2007) հաղթողներ և մրցանակակիրներ: Ժուժան շախմատ. «Օսկար»-ի (1994) մրցանակակիր է, կանանց (1987) և տղամարդկանց (1991) միջազգ. գրոսմայստեր, աշխարհի չեմպիոն (1996–99): Սոֆյան՝ կանանց միջազգ. գրոսմայստեր (1984), տղամարդկանց միջազգ. վարպետ (1990), շախմատ. «Օսկար» (1994): Հուդիթը՝ կանանց (1988) և տղամարդկանց (1992) միջազգ. գրոսմայստեր, շախմատ. «Օսկար» (1988–90, 1994), Հունգարիայի տղամարդկանց առաջնության չեմպիոն (1991):

ՊՈԼԵՅԱՆ Մկրտիչ, **Պոլեի Մճո** (1868–1915), ազգ-ազատագր. շարժման գործիչ, ֆիդայի: Մասնակցել է Սասունի 1904-ի ապստամբությանը, 1905–06-ին՝ *հայթաթարական ընդհարումներին*: 1915-ի Սասունի ինքնապաշտպ-յան ղեկ-ներից է, զոհվել է մարտում:

ՊՈԼԵՆՈՎ Անդրեյ Լվովիչ (1871–1947), նյարդավիրաբուժության հիմնադիրներից ԽՍՀՄ-ում: ԲԳԱ ակադ. (1945): Աշխ-ները վերաբերում են ծայրամաս. և վեգետատիվ նյարդ. համակարգերի, գլխուղեղի և ողնուղեղի հաղորդիչ ուղիների վնասվածքաբանությանը և վիրաբուժությանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946):

ՊՈԼԵՆՈՎ Կոնստանտին Պավլովիչ (1835–1908), ռուս մետաղագործ: Աշակել է ամրացված երկաթե ռելսերի (1864) արտադր-յան և հեղուկ նվազսիլիցիում. թուջի բեսեմերացման եղանակ (այսպես կոչված ռուս. բեսեմերացում, 1875–76):

ՊՈԼԵՆՈՎ Վասիլի Դմիտրևիչ (1844–1927), գեղանկարիչ, բեմանկարիչ: ՌԽՖՍՀ ժող. նկարիչ (1926): Հեղինակ է պլեներ. բնանկարների («Մոսկովյան բակ», 1878), կենցաղ. («Հիվանդ կինը», 1886), պատմ. և կրոն. թեմաներով կոմպոզիցիաների («Քրիստոսը և մեղսագործ կինը», 1886–1887), թատեր. ձևավորումների, երաժշտ. գործերի («Հելլադայի ուրվականները», օպերա, 1906), նաև ռոմանսների, օրատորիայի ևն: Պ-ի «Ոսկե աշուն» (1894), «Օկա գետի ափերը» (1895) և այլ գործեր ՀԱՊ-ում են:

ՊՈԼԵՆՑ (Polenz) Վիլհելմ ֆոն (1861–1903), գերմանացի գրող: Հեղինակ է «Հայնրիխ ֆոն Քլայստ» (1891), «Անդրեաս Բոքհոլդ» (1898) դրամաների, «Բրայտենդորֆի քահանան» (1893), «Գյուղացի Բյուտները» (1895, հայ.՝ 1910), «Գերեզմանափորը» (1897) եռերգության, «Գյուղական պատմվածքներ» (1901), «Ապագայի երկիրը» (1903) ակնարկների, «Բերքի ժամանակը» (հրտ.՝ 1904) բանաստեղծությունների ժող-ների:

ՊՈԼԵՆՏՉՈՒԿ Ալեքսանդր Ֆեոդորովիչ (ծ. 1953), ռուս տիեզերագնաց օդաչու: ՌԴ հերոս (1993): Թռել է «Սոյուզ ՏՄ-16» տիեզերանավով («Միր» ուղեծրակայանի 13-րդ անձնակազմում՝ Գ. Մ. *Մանակովի* հետ, 1993): Թռիչքի ընդհ. տևողությունը՝ 179 օր:

ՊՈԼԵՍԻԵԻ ՅԱՆԻՐԱՎԱՅԻՐ, Պոլեսիե, Բելառուսի հվ-ում, Ուկրաինայի հս-ում և Ռուսաստանի արմ-ում՝ Պրիպյատ, Դնեպր և Դեսնա գետերի ավազաններում: Տարածքը՝ մոտ 270 *կմ*^{2}, բարձր.՝ 100–250 *մ*: Տարածքի զգալի մասը ճահ-

ճակալած է: Կան բազմաթիվ լճեր, 1/3-ն անտառապատ է (սոճազգիներ):

ՊՈԼԵՎՈՅ (Կամպով) Բորիս Նիկոլաևիչ (1908–1981), ռուս գրող: Սոց. աշխ. հերոս (1974): 1962-ից՝ «Յունոստ» (ռուս.) թերթի գլխ. խմբ.: «Պատմություն իսկական մարդու մասին» (1946, հայ.՝ 1948) վեպի հիմքում օդաչու Ա. Պ. Մարեսևևի սխրագործությունն է: Հեղինակ է նաև «Ռևկի» (1949–50), «Բժշկուհի Վերան» (1966, կինոնկար՝ 1968) վեպերի, Նյուրնբերգյան դատավարության մասին «Վերջ ի վերջո» (1968) օրագրության, նաև վիպակների, պատմվածքների: Հայ. հրատարակվել են նաև «Մենք սովետական մարդիկ ենք» (1950), «Մեր Լենինը» (1986) գործերը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1947, 1949):

ՊՈԼԵՎՈՅ Նիկոլայ Ալեքսեևիչ (1796–1846), ռուս գրող, լրագրող, պատմաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1831): 1825-ից՝ «Մոսկովսկի տելեգրաֆ» (ռուս., արգելվել է 1834-ին) ամսագրի հրտ.: Ռուսաստանում բուրժ. առաջադիմության գաղափարախոսներից: Հեղինակ է «Գեղանկարիչը», «Խելահեղության երանություն» (երկուսն էլ՝ 1833) վեպերի, «Երդում Տիրոջ գերեզմանի մոտ» (1832) պատմավեպի, «Ռուս ժողովրդի պատմություն» (հ. 1–6, 1829–33) աշխ-յան:

ՊՈԼԶՈՒՆՈՎ Իվան Իվանովիչ (1728–1766), ռուս ջերմատեխնիկ: 1763-ին մշակել է համապիտանի շոգեշարժիչի՝ աշխարհում առաջին անընդհատ գործողության երկգլան մեքենայի նախագիծը, որն ինքն իրականացնել չկարողացավ: 1765-ին այլ նախագծով ստեղծել է Ռուսաստանում առաջին շոգեուժային սարքը՝ գործարան. կարիքների համար, որն աշխատել է 43 օր:

ՊՈԼԻ... (հուն.՝ polys – բազմաթիվ, լայնածավալ), բարդ բառերի մաս. նշանակում է բազմություն, երևույթի բազմակողմանի ընդգրկում կամ բազմատեսակ կազմություն (օր.՝ *պոլիանդրիա*, *պոլիմեր*):

ՊՈԼԻԱԿՐԻԼԱՏՆԵՐ, սինթետիկ պոլիմերներ, ակրիլաթթվի, մետակրիլաթթվի և ցիանակրիլաթթվի էսթերների պոլիմերները (–CH_2–CR'(COOR)–)$_n$ (R=H ակրիլատներ, R=CH_3 մետակրիլատներ, R=CN ցիանակրիլատներ): Անգույն, ջերմապլաստիկ, ֆիզիոլոգիապես պասսիվ պոլիմերներ են, լավ են լուծվում օրգ. լուծիչներում: Օգտագործվում են օրգ. ապակու, թաղանթների, լաքերի, ներկերի, սոսինձների արտադր-յունում, բժշկության մեջ՝ ատամնախոռոչները լցնելու, արհեստ. ծնոտներ, ատամներ, պրոթեզներ, հպասպնյակներ պատրաստելու համար:

ՊՈԼԻԱԿՐԻԼՈՆԻՏՐԻԼ, սինթետիկ պոլիմեր, *ակրիլոնիտրիլի* պոլիմերը: Կայուն է օրգ. լուծիչների, ճարպերի և քիմ. այլ ազդակների, արևի ճառագայթների, մթն. պայմանների նկատմամբ: Մինչև 230°C տաքացնելիս չի փափկում, ավելի բարձրում կառուցվածքախախտվում է:

ՊՈԼԻԱԿՐԻԼՈՆԻՏՐԻԼԱՅԻՆ ՄԱՆՐԱԹԵԼ, սինթետիկ մանրաթել, ստացվում է *պոլիակրիլոնիտրիլի* կամ նրա ածանցյալների լուծույթներից և պարունակում է 85%-ից ավելի ակրիլանիտրիլ: Պ. մ-երը մեխ. հատկություններով նման են բրդին, կայուն են օրգ. լուծիչների, միջին կոնցենտրացիայի ուժեղ թթուների և ալկալիների նկատմամբ: Լուծվում են ֆենոլում, կրեզոլում, ֆորմալինում: Օգտագործում են գորգեր, արտահագուստ, սպիտակեղեն, վարագույրներ, պաստառներ գործելու համար: Պ. մ-երի առևտր. անվանումներն են՝ նիտրոն, օռլոն, ակրիլան ևն:

ՊՈԼԻԱՄԻԴԱՅԻՆ ԹԱՂԱՆԹՆԵՐ, թափանցիկ թաղանթներ, ստացվում են *պոլիամիդների* հալույթներից կամ լուծույթներից: Մաշակայուն են, կայուն՝ ալկալիների, լուծիչների, յուղերի նկատմամբ: Կիրառվում են սննդամթերքի փաթեթավորման, որպես թաղանթներ՝ երշիկների համար, էլեկտրամեկուսիչ նյութեր են:

ՊՈԼԻԱՄԻԴԱՅԻՆ ՄԱՆՐԱԹԵԼԵՐ, սինթետիկ մանրաթել, ստանում են *պոլիամիդների* հալույթներից կամ լուծույթներից: Կայուն են ձգման, շփման, հարվածների, քիմ. ու կենսբ. ազդակների նկատմամբ: Օգտագործում են գործվածքեղենի, ավտոդողերի, ռետինատեխ. իրերի, ձկնորս. ցանցերի, ճոպանների և այլ արտադր-յան համար: Առևտր. անվանումներն են՝ կապրոն, նայլոն-6, դեդերոն, պեռլոն, ամիլան, ստիլոն, նիպլոն ևն:

ՊՈԼԻԱՄԻԴՆԵՐ, սինթետիկ պոլիմերներ, որոնք մակրոմոլ-ի շղթայում պարունակում են ալիֆատիկ և արոմատիկ ռադիկալներին միացած ամիդային խմբեր՝ –CO–NH–: Սպիտակ, եղջերանման, թափանցիկ բյուրեղ. նյութեր են, երբեմն՝ մածուցիկ հեղուկներ (խեժեր): Ջերմապլաստիկ, թեթև, մեխ. բարձր ամրության, առաձգ., մաշակայուն, ջերմակայուն և քիմիապես կայուն նյութեր են: Օգտագործվում են մանրաթելեր և թաղանթներ ստանալու, նաև մեքենամասեր պատրաստելու համար: Առավել տարածված են պոլիկապրոամիդը, պոլիհեքսամեթիլենադիպինամիդը, պոլիհեքսամեթիլենսեբացինամիդը:

ՊՈԼԻԱՆԴՐԻԱ (< *պոլի*... և հուն.՝ aner, սեռ. հոլ.՝ andros – ամուսին), խմբամուսնության հազվադեպ հանդիպող ձև, երբ կինն ունեցել է մի քանի ամուսին (սովորաբար՝ եղբայրներ): XIX դ-ում հանդիպել է ալեուների, էսկիմոսների, ավելի ուշ՝ Հս. Հնդաստանի և Տիբեթի ազգագր. որոշ խմբերում:

ՊՈԼԻԱՐԻԼԱՏՆԵՐ, սինթետիկ պոլիմերներ, երկկարբոնաթթուների և երկատոմ ֆենոլների (կամ դրանց ածանցյալների) փոխազդեցության արգասիքներ: Պ-ից պատրաստում են դիէլեկտրիկներ, փրփրապլաստներ, թաղանթներ և բարձր ջերմակայունությամբ օժտված այլ իրեր:

ՊՈԼԻԲԻՈՍ (մ. թ. ա. մոտ 200–մոտ 120), հույն պատմագիր: Հեղինակ է «Պատմություն» աշխ-յան (40 գրքով, ամբողջությամբ պահպանվել են առաջին 5 գրքերը), որտեղ շարադրել է Հռոմի, Կարթագենի և հելլենիստ. աշխարհի՝ մ. թ. ա. 220–146-ի ժամանակաշրջանի պատմությունը, նաև տեղեկություններ է հաղորդում Ծովփքի, Մեծ Հայքի, Փոքր Հայքի, *Արտաշես Ա*-ի մասին: Պ. Հին աշխարհի ամենավստահելի հեղինակներից է:

ՊՈԼԻԲՈՒՏԱԴԻԵՆ, սինթետիկ պոլիմեր, բուտադիենի պոլիմերը, տես *Բուտադիենային կաուչուկ*:

ՊՈԼԻԳԱՄԻԱ, 1. մարդկանց համար՝ *բազմամուսնություն*: 2. (Կենդր.) բազմացման շրջանում 1 արուի բեղմնավորումը մի քանի էգերի (պոլիգինիա՝ ծովարջեր, երկրականջ փոկեր, մի շարք սմբակավորներ) կամ 1 էգի բեղմնավորումը մի քանի արուներով (պոլիանդրիա՝ հավանմանններ, կոլիբրիներ, կտցարներ և բազմաթիվ միջատներ): Տես նաև *Մենոգամիա*:

ՊՈԼԻԳԵՆԵՐ, ոչ ալելային գեներ, որոնք ազդում են քանակ. հատկանիշների դրսևորումների (օր.՝ կիթի, կաթի յուղայնության) վրա:

ՊՈԼԻԳՆՈՏՈՍ (Polygnotos), մ. թ. ա. V դ-ի 2-րդ քառորդի հույն գեղանկարիչ, քանդ.: Ստեղծել է դից. և պատմ. թեմաներով որմնանկարներ Աթենքի պինակոտեկայում (պատկերասրահ), մոմանկարներ (չեն պահպանվել):

ՊՈԼԻԳՈՆ (հուն.՝ poligones – բազմանկյուն), ցամաքի կամ ծովի հատուկ սարքավորված հատված (օդ. տարածքով)՝ զենքի և ռազմ. տեխնիկայի փորձարկման ու զորքերի մարտ. պատրաստության համար:

ՊՈԼԻԳՐԱՖԻԱ (բառացի՝ **բազմագրություն**, իմաստով՝ բազմատպություն), 1. տեխնիկայի բնագավառ, տեքստ. նյութերի և գրաֆիկ. պատկերների բազմաքանակ վերարտադրման տեխ. միջոցների ամբողջությունը: Պ-ի հիմն. արտադր. շարժընթացներն են *տպաձևերի* պատրաստումը, տպագրությունը, տպագրված արտադրանքի կազմումն ու վերջնամշակումը: Պ-ական արդ-յան տպագիր արտադրանքի (լրագիր, գիրք, ամսագիր, պլակատ, քարտեզ ևն) ձեռներն անվանում են տպարան, գունավոր և օֆսեթ տպագրության ֆաբրիկա, պոլիգրաֆկոմբինատ ևն: Հայաստանում Պ-ական արդ-յունը ձևավորվել է XIX դ-ի վերջին քառորդին:

1921-ից գործել են *Հայպետհրատի* պոլիգրաֆբաժնի և Էջմիածնի գիտ. ինստ-ի տպարանները, 1923-ին հիմնադրվել է Պետհրատի 2-րդ տպարանը: 1948-ին բացվել է Պոլիգրաֆկոմբինատը (այժմ՝ «Հակոբ Մեղապարտ տպագրատուն»), 1978-ին՝ Գունավոր տպագրության տպարանը: Տես նաև *Հայկական տպագրություն*:

2. (Բժշկ.) ռենտգենախտորոշման մեջ միևնույն ժապավենի վրա որևէ օրգանի մի քանի նկարների ստացումը ժամանակի փոքր ընդմիջումներով՝ նրանց ֆունկցիաները (ստոծանու շարժունակությունը, ստամոքսի գալարակծկանքը) հետազոտելու համար:

«ՊՈԼԻԳՐԱՖԻՍՏ», եռամսյա հանդես (1957–89, Երևան): ՀԽՍՀ պոլիգրաֆարդյան և հրտչ-յունների գիտատեխ. ընկ-յան հանրապետ. վարչության հրտ-յուն: Խմբ-ներ՝ Աշոտ Մարտիկյան, Սուրեն Խաչատրյան:

ՊՈԼԻԴՈՐՈՍ ՎԵՐԳԻԼԻՈՍ (Polydorus Vergilius, մոտ 1470–1555), իտալացի պատմաբան-հումանիստ: Կյանքի մեծ մասն անցկացրել է Անգլիայում: Անգլիայի պատմության մասին առաջին հումանիստ. երկերի հեղինակներից:

ՊՈԼԻԵԹԵՐՆԵՐ, սինթետիկ պոլիմերներ, մոլ-ում պարունակում են պարզ եթեր.՝ R–O–R (պարզ Պ., R-ն օրգ. ռադիկալ է) կամ բարդ եթեր.՝ էսթերային R–O–CO–R (բարդ Պ.) խմբեր: Պարզ Պ-ից առավել կարևոր են պոլիֆորմալդեհիդը, պենտապլաստը, էպօքսիդային խեժերը, բարդ Պ-ից՝ ալկիդային խեժերը, պոլիէթիլենտերեֆտալատը, պոլիկարբոնատները:

ՊՈԼԻԵՆ-ՖՏՈՐ-ՔԼՈՐԷԹԻԼԵՆ, **ֆտորպլաստ-3**, **ֆտորլոն-3**, (–CF_2CFCl–)$_n$, սինթետիկ պոլիմեր, եռֆտորքլորէթիլենի պոլիմերը: Սպիտակ, պինդ նյութ է, կայուն է շատ քիմ. ռեագենտների նկատմամբ, լավ

դիէլեկտրիկ է: Կիրառվում է հակակոռոզային ծածկույթներ ստանալու և էլ. լարերը մեկուսացնելու համար: Ֆլյուորետենի, խոստաֆլոնի, դայֆլոնի նմանակն է:

ՊՈԼԻԵՎԿՏՈՎ Միխայիլ Ալեքսանդրովիչ (1872–1942), ռուս. պատմաբան: Աշխ-ները վերաբերում են Ռուսաստանի արտաքին քաղ-յանը, ռուս-վրաց. հարաբերություններին: Լույս է ընծայել Կովկասի ժողդ-ների XIII–XVIII դդ-ի պատմության աղբյուրները:

ՊՈԼԻԷԹԻԼԵՆ, $(-CH_2-CH_2-)_n$, էթիլենի պոլիմերը: Սպիտակ, ջերմապլաստիկ, առաձգ., ձգման նկատմամբ կայուն, էլեկտրամեկուսիչ նյութ է: Կայուն է ալկալիների, օրգ. և չօքսիդացնող թթուների, անկայուն՝ ազոտական թթվի, քլորի, ֆտորի նկատմամբ: Պ-ից ստանում են թաղանթներ, խողովակներ, ձևավոր հատույթով առարկաներ, պատրաստում անոթներ, տարողություններ, կենցաղ. իրեր, սանհանգույցի սարքեր, օգտագործում են որպես էլեկտրամեկուսիչ ևն: Պ. թողարկվում է մաղլեքս, բակելիտ, ալաղոն, ելտեքս և այլ անվանումներով:

ՊՈԼԻԷԹԻԼԵՆԱՅԻՆ ԹԱՂԱՆԹՆԵՐ, թափանցիկ կամ կիսաթափանցիկ թաղանթներ, ստացվում են պոլիէթիլենի հալույթից՝ արտամղման եղանակով: Կայուն են ցածր ջերմաստիճաններում, գոլորշա- և ջրանթափանց են: Կիրառվում են փաթեթավորման (օր.՝ սննդամթերքի) համար, ջերմոցների շին-յան մեջ, որպես էլեկտրամեկուսիչ նյութ ևն:

ՊՈԼԻԷԹԻԼԵՆԱՅԻՆ ԽԵԺԵՐ, էթիլենի պոլիմերմամբ ստացվող ցածրմոլ. զանգվածով պոլիմերները (օլիգոմերներ):

ՊՈԼԻԷԹԻԼԵՆԻՄԻՆ, **պոլիիմին**, $[-CH_2CH_2NH-]_n$, սինթետիկ պոլիմեր, էթիլենիմինի պոլիմերը: Անգույն, մածուցիկ հեղուկ է: Կիրառվում է թղթի արտադր-յան մեջ, որպես փաթիլացնող գործոն՝ արդ. և կենցաղ. ջրերի մաքրման ժամանակ:

ՊՈԼԻԷԹԻԼԵՆՏԵՐԵՖՏԱԼԱՏ, սինթետիկ պոլիմեր. էթիլենգլիկոլի և տերեֆտալաթթվի (կամ երկմեթիլէսթերի) պոլիկոնդենսման արգասիքը: Ամորֆ վիճակում պինդ է, անգույն, թափանցիկ, իսկ բյուրեղ. վիճակում՝ սպիտակ, ոչ թափանցիկ: Տաքացնելիս բյուրեղայինից անցնում է ամորֆ վիճակի: Ձերմապլաստիկ է, ամուր, մաշակայուն, լավ դիէլեկտրիկ:

ՊՈԼԻԷԼԵԿՏՐՈԼԻՏՆԵՐ, *պոլիմերներ*, որոնց մոլ-ները պարունակում են լուծույթում իոնացվող խմբեր: Պ. են կարևոր կենսապոլիմերները՝ սպիտակուցները և նուկլեինաթթուները: Լայն կիրառություն ունեն չլուծվող Պ.՝ իոնիտները:

ՊՈԼԻԷՄԱԹԵՐԱՅԻՆ ԼԱՔԵՐ, լաքաներկ. նյութեր, որոնց թաղանթառաջացնող բաղադրիչը *պոլիէսթերային խեժերն* են: Առաջացնում են գեղազարդիչ ծածկույթներ: Պ. լ. և նրանց հիմքի վրա ստացվող արծնային ներկերը, մածիկները կիրառում են գլխավորապես փայտից պատրաստված իրերի երեսամշակման համար, օր.՝ կահույքի:

ՊՈԼԻԷՄԱԹԵՐԱՅԻՆ ԽԵԺԵՐ, չհագեցած օլիգոէսթերներ, գլիկոլների և մալեինաթթվի կամ ֆումարաթթվի պոլիկոնդենսման (լուծիչները մոնոմերներ են, գլխավորապես՝ ստիրոլը) արգասիքների 50–70-%-անոց լուծույթները: Պնդանում են՝ առաջացնելով տարած. պոլիմերներ: Պնդացած Պ. խ. ամուր, քիմիապես կայուն նյութեր են, լավ կպչում են ապակե մանրաթելերին, թղթին, մետաղներին, կայուն են ջրի, թթուների, բենզինի, յուղերի և օքսիդիչների նկատմամբ, լավ էլեկտրամեկուսիչ են: Տարածված Պ. խ. են պոլիմալեինատները և օլիգոէսթերակրիլատները: Կիրառվում են ապակեպլաստիկների, լաքերի, մեկուսախառնուրդների, սոսինձների արտադր-յան մեջ:

ՊՈԼԻԷՍԹԵՐԱՅԻՆ ՄԱՆՐԱԹԵԼԵՐ, սինթետիկ մանրաթելեր, կաղապարվում են պոլիէթիլենտերեֆտալատի կամ նրա ածանցյալների հալույթից: Առավելությունները են աննշան ճմռթվելիությունը, բարձր լուսա- և մթնոլորտակայունությունը, մեծ ամրությունը, կայունությունը՝ քերամաշելիության և օրգ. լուծիչների հանդեպ: Թերությունները՝ ներկվելու դժվարությունը, ուժեղ էլեկտրականացումը, կոշտությունը, որը վերացվում է քիմ. վերափոխմամբ: Կիրառվում են, օր., տարբեր գործվածքների, արհեստ. մորթու, ճոպանների արտադր-յան մեջ, դոդերի ամրացման համար: Հիմն. առևտր. անվանումներն են՝ լավսան, տերիլեն, դակրոն, տետերոն, տերգալ ևն:

ՊՈԼԻԻԶՈԲՈՒՏԻԼԵՆ, $[-C(CH_3)_2-CH_2]_n$, սինթետիկ պոլիմեր, ***իզոբուտիլենի*** պոլիմերը: Մածուցիկ հեղուկներ են կամ կաուչուկանման ամորֆ նյութեր: Առաձգ. են, գազանթափանց: Լավ դիէլեկտրիկներ են: Կայուն են թթուների, ալկալիների, աղերի լուծույթների, արևի և ԱՄՁ-ի ազդեցության նկատմամբ: Օգտագործում են քիմ. սարքավորումները երեսպատելու, էլեկտրամեկուսիչներ, սոսինձներ, ջրաթափանց գործվածքներ հերմետիկացնող բաղադրություններ ևն պատրաստելու համար:

ՊՈԼԻԻՄԻԴՆԵՐ, սինթետիկ պոլիմերներ, մոլ-ները պարունակում են իմիդային խումբ, ստացվում են քառակարբոնաթթուների կամ նրանց ածանցյալների և երկամինների պոլիկոնդենսացմամբ: Առավել կարևոր Պ. պոլիպիրոմելիտիմիդն է, որը ջերմա- և ճառագայթակայուն նյութ է՝ լավ էլեկտրամեկուսիչ հատկություններով: Դրանից ստանում են պլաստմասսաներ, թաղանթներ, լաքեր, սոսինձներ, մանրաթելեր, որոնք կիրառվում են ավիացիայում և տիեզ. տեխնիկայում:

ՊՈԼԻԿԱՊՐՈԱՄԻԴ, **պոլի-ε-կապրոլակտամ, պոլիամիդ-6**, $[-NH(CH_2)_5CO-]_n$, կապրոլակտամի գծային պոլիմերը: Անհոտ, սպիտակ, եղջերանման նյութ է: Ունի մեծ մաշակայունություն և մեխ. ամրություն, քիմիապես կայուն է: Կիրառվում է մանրաթելեր արտադրելու և մեքենաների տարբեր մասեր պատրաստելու համար: Արտադրվում է կապրոն, կապրոլան, պեռլոն, դեդերոն, սիլոն, ամիլան, նայլոն-6, պլասկոն անվանումներով:

ՊՈԼԻԿԱՐԲՈՆԱՏՆԵՐ, սինթետիկ պոլիմերներ, երկատոմ ֆենոլների և ածխաթթվի ածանցյալների փոխազդեցության արգասիքը: Պինդ, անգույն նյութեր են: Առավել տարածված Պ. ստացվում է երկֆենիլոլպրոպանից և ֆոսգենից:

ՊՈԼԻԿԱՊՐԻՈԳՐԱՖԻԱ, **բազմասրտագրություն**, սրտի սիստոլայի մեխ. փուլերի, այսինքն՝ սրտամկանի կծկող. ունակության և հեմոդինամիկայի խանգարումների մասին մասնակի տվյալների ստացման բժշկ. հետազոտության մեթոդ:

ՊՈԼԻԿԱՐՊՈՎ, Նիկոլայ Նիկոլաևիչ (1892–1944), ռուս ավիակոնստրուկտոր: Սոց. աշխ. հերոս (1940): Ղեկավարել է Ի-1, -15, -16, -153 կործանիչների, Ու-2 (Պո-2) ուս. և գիշեր. թեթև ռմբակոծիչների, Р-5 հետախույզ-ինքնաթիռի ստեղծման աշխ-ները: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1943):

ՊՈԼԻԿԼԵՏՈՍ (Polykleitos) **Արգոսցի**, մ. թ. ա. V դ-ի 2-րդ կեսի հույն քանդ., տեսարան: Պ-ի բրոնզե արձանները («Դորիֆորոս», «Դիադումենոս», «Վիրավոր ամազոնուհին»), որոնք չեն պահպանվել (հայտնի են կրկնօրինակներով), առանձնանում են դաս. պարզ պլաստիկայով, անբռնազբոս կոմպոզիցիայով: «Կանոն» երկում հիմնավորել է մարդու մարմնի իդեալ. համաչափության թվային օրենքը, որն օգտագործել է իր քանդակներում:

ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ (< *պոլի...* և *կլինիկա*), բուժհիմնարկ, որն ամբուլատոր օգնություն է ցուցաբերում երթևեկ հիվանդներին և արտահիվանդանոց. օգնություն՝ տանը:

ՊՈԼԻԿՈՆԴԵՆՍՄԻՄ (< *պոլի...* և լատ.՝ condensatio – խտացում), պոլիմերների սինթեզման եղանակ, երբ մոնոմեր-օլիգոմեր փոխազդեցությունն ուղեկցվում է կողմնակի ցածրմոլ. միացությունների (օր.՝ ջրի, սպիրտի) առաջացմամբ: Կիրառվում է արդ-յան մեջ՝ պոլիամիդներ, սինթետիկ խեժեր, սիլիցիումօրգ. պոլիմերներ ստանալու համար: Պ. ընկած է սպիտակուցների, նուկլեինաթթուների, թաղանթանյութի կենսասինթեզի հիմքում:

ՊՈԼԻԿՐԱՏՈՍ (Polycrates, ծ. թ. անհտ–մ. թ. ա. մոտ 523/522), մոտ 540-ից՝ Սամոս կղզու տիրակալ: Հատել է դրամ, իրականացրել շին. աշխ-ներ, ստեղծել ռազմ. ու առևտր. նավատորմ և բանակ: Առևտր. ճանապարհների համար պայքար է մղել Փոքր Ասիայի և Էգեյան ծովի կղզիների քաղաքների դեմ:

ՊՈԼԻՀԵՔՍԱՄԵԹԻԼԵՆԱԴԻՊԻՆԱՄԻԴ, **պոլիհեքսամեթիլենադիպամիդ**, պոլիամիդ-6,6, $[-HN(CH_2)_6NHCO(CH_2)_4CO-]_n$, հեքսամեթիլենդիամինի և ադիպինաթթվի ***պոլիկոնդենսման*** արգասիքը: Բյուրեղ., անգույն, անհոտ, եղջերանման պոլիմեր: Ունի մեծ ամրություն, հարվածադիմացկունություն, էլաստիկություն և մաշակայունություն: Կիրառվում է հիմնականում պոլիամիդային մանրաթելերի արտադր-յան մեջ:

ՊՈԼԻՀԵՔՍԱՄԵԹԻԼԵՆՍԵԲԱՑԻՆԱՄԻԴ, $[-HN(CH_2)_6NHCO(CH_2)_8CO-]_n$, հեքսամեթիլենդիամինի և սեբացինաթթվի պոլիկոնդենսման արգասիքը: Անգույն, պինդ նյութ է: Օժտված է մեծ ամրությամբ, հակաշփ. հատկություններով, քիմ. կայունությամբ: Կիրառվում է կառուցվածք. դետալների, պոլիամիդային մանրաթելերի, թաղանթների արտադր-յան մեջ:

ՊՈԼԻՀԻՄՆԻԱ (Polyhymnia), հիմների հովանավորուհին՝ ինը երաժիշտ մուսաներից հուն. դից-յան մեջ:

ՊՈԼԻՄԵԹԻԼՄԵՏԱԿՐԻԼԱՏ, $[-CH_2C(CH_3)(COOCH_3)-]_n$, մեթիլմետակրիլատի պոլիմերման արգասիքը: Անգույն, պինդ նյութ է: Օպտիկապես թափանցիկ է, լուսակայուն, ունի մեխ. և էլեկտրամեկուսիչ հատկություններ: Ձերմապլաստիկ է: Հիմն. տեխ. արգասիքն օրգ. ապակին է: Առևտր. անվանումներն են՝ պլեկսիգլաս, լիմակրիլ, պերսպեկս, պլակրիլ, ակրիլեքս, ակրիլայթ, ակրիպլաստ ևն:

ՊՈԼԻՄԵՐԱՅԻՆ ԹԱՂԱՆԹՆԵՐ, սինթետիկ պոլիմերներից պատրաստված թաղանթներ: Կիրառում են կինո- և լուսա-

թաղանթների, մազնիս. ժապավենների, ջրամեկուսացման, ջերմոցների և գղտ. հողահանդակների ծածկման, էլեկտրամեկուսացման, փաթեթավորման, պոլիգրաֆ. արտադրանքի լամինացման համար, որպես գեղազարդիչ նյութ, լուսազտիչներ ևն:

ՊՈԼԻՄԵՐԲԵՏՈՆ, **պլաստբետոն**, բետոն, որի կապակցանյութը սինթետիկ պոլիմերն է (սովորաբար՝ ջերմառեակտիվ ձյութը): Ունի ձգման մեծ ամրություն, քիմ- և մաշակայունություն, փոքր փխրունություն և ջրաթափանցելիություն, թերությունը՝ դյուրավառությունը: Կիրառվում է արդ. շենքերի հատակները ծածկապատելու, կամուրջների, ճանապարհների բարձրորակ ծածկույթներ պատրաստելու համար:

ՊՈԼԻՄԵՐՆԵՐ (< *պոլի...* և հուն.՝ meros – բաժին, մաս), մեծ մոլ. զանգվածով քիմ. միացություններ, որոնց մոլ–ները (մակրոմոլ–ներ) կազմված են բազմաթիվ անգամ կրկնվող ատոմ. խմբերից՝ մոնոմեր. օղակներից: Ըստ ծագման՝ Պ. լինում են **բնական** (բնական խեժեր և կենսապոլիմերներ՝ սպիտակուցներ, նուկլեինաթթուներ, թաղանթանյութ ևն) և **սինթետիկ** (պոլիէթիլեն, ֆենոլմրջնալդեհիդային խեժեր ևն), որոնք ստացվում են ***պոլիմերման*** և ***պոլիկոնդենսման*** եղանակներով: Ըստ մոլ–ի ձևի՝ տարբերում են **գծային** (կաուչուկ, պոլիէթիլեն ևն), **ճյուղավորված** (ամիլոպեկտին ևն) և **կարված** (պնդացած էպօքսիդային խեժեր ևն), ըստ բնույթի՝ օրգ., տարրօրգ., անօրգ. Պ.: Պլաստմասսաների, քիմ. մանրաթելերի, ռետինի, լաքաներկ. նյութերի, սոսինձների, թաղանթների, իոնիտների հիմքն են: Պ. տերմինը ներմուծել է Ի. Յ. *Բերցելիուսը* 1833–ին:

ՊՈԼԻՄԵՐՈՒՄ, քիմ. ռեակցիա, որի արդյունքում ցածրմոլ. մոնոմերներից առաջանում են բարձրմոլ. միացություններ՝ ***պոլիմերներ***: Պոլիմերի առաջացումը միայն մեկ մոնոմերից կոչվում է **հոմոպոլիմերում** (համասեռ Պ.), 2 և ավելի մոնոմերներից՝ **համապոլիմերում** (համատեղ Պ.): Կիրառվում է արդ–յան մեջ՝ պոլիօլեֆիններ, պոլիստիրոլ, պոլիակրիլատներ, կաուչուկներ ստանալու համար:

ՊՈԼԻՄՈՐՖԻԶՄ (< *պոլի...* և հուն.՝ morphe – ձև), որոշ նյութերի մի քանի բյուրեղ. վիճակներում (մոդիֆիկացիաներ) գոյություն ունենալու հատկությունը: Յուրաքանչյուր այդպիսի վիճակ կոչվում է պոլիմորֆ ձևափոխություն և կայուն է որոշակի արտաքին պայմաններում: Պ–ի օրինակ են ***ալմաստը*** և ***գրաֆիտը***:

ՊՈԼԻՄՈՐՖՈՋՆԵՐ, ջրլող թռչունների, հիմնականում՝ էգերի ինվազիոն հիվանդություն (ականտոցիֆալոզների խմբից): Հարուցիչները բարակ աղիներում մակաբուծվող պոլիմորֆիդ ընտանիքի գլաորդեն են: Ախտաշանները՝ լուծ, ածի դանդաղում, երբեմն՝ անկումներ:

ՊՈԼԻՄՐԶՆԱԼԴԵՀԻԴ, **պոլիֆորմալդեհիդ**, $(-CH_2-O-)_n$, ***մրջնալդեհիդի*** գծային պոլիմերը: Եղջերակերպ, սպիտակ նյութ է: Ամենակարծր կառուցվածք. ջերմապլաստիկներից է, ունի բարձր կայունություն, հոգնածադիմացկունություն, մաշակայունություն, ջրանթափանցիկություն: Կայուն է լուծիչների և ալկալիների նկատմամբ, լուծվում է թթուներում: Օգտագործվում է մեքենաների մասեր պատրաստելու և մասամբ մանրաթելեր ստանալու համար: Արտադրվում է դելրին, սելկոն, պոլիֆայդ և այլ անվանումներով:

ՊՈԼԻՆԳ (Pauling) Լայնուս Կառլ (1901–1994), ամերիկացի ֆիզիկոս և քիմիկոս: ԱՄՆ ԳԱԱ, ՌԳԱ արտ. (1958) անդամ: Ամերիկ. քիմ. ընկ–յան նախագահ (1948): Աշխ–ները վերաբերում են քվանտ. մեխանիկայի եղանակներով քիմ. կապի և մոլ–ի կառուցվածքի ուսումնասիրություններին, որոնց միջոցով տրվել է կովալենտ կապի քվանտամեխ. մեկնաբանությունը: Ռենտգենագր. եղանակով ուսումնասիրել է բազմաթիվ անօրգ. նյութեր, բացահայտել նրանց կառուցվածքը, ձևակերպել իոն. բյուրեղների առաջացման օրինաչափությունները արտահայտող կանոնները, հաշվել իոն. շառավիղները, առաջարկել ատոմների էլեկտրաբացասականությունը հաշվելու եղանակ: Պ. ռեզոնանսի տեսության հեղինակն է: ***Պագուոշյան շարժման*** կազմակերպիչներից է, պայքարել է միջուկ. զենքի փորձարկումների դեմ:

Նորելյան (1954–ին՝ քիմիա, և 1962–ին՝ Խաղաղության), Լենինյան միջազգ. (1970) մրց–ներ, ԽՍՀՄ ԳԱ Մ. Վ. Լոմոնոսովի անվ. Մեծ ոսկե մեդալ (1978):

ՊՈԼԻՆԵԶԻԱ, կղզեխումբ Օվկիանիայում՝ Խաղաղ օվկ–ի կենտր. մասում: Հվ. կղզիներից ձգվում է մինչև Նոր Զելանդիա: Տարածքը (առանց Նոր Զելանդիայի)՝ մոտ 26 հզ. *կմ*²: Կղզիների հիմն. խմբերն են՝ Հավայան, Տուամոտու, Սամոա, Լայն, Ընկերություն: Բարձր.՝ մինչև 4205 *մ*: Ծածկված է մշտադալար արևադարձ. անտառներով և սավաննաներով: Արդյունահանում են մարգարիտ, զբաղվում արևադարձ. երկրագործությամբ, ձկնաբուծությամբ: Գլխ. նվինզատ–ները՝ Հոնոլուլու, Պապեետե, Ապիա, Պագո–Պագո:

ՊՈԼԻՆԵԶԻԱ ֆրանսիական (Polynésie française), Ֆրանսիայի անդրծով. տարածք Խաղաղ օվկ–ի կենտր. մասում՝ Պոլինեզիայում: Ներառում է Ընկերության (այդ թվում՝ Թայիթին), Մարկիզյան, Տուամոտու, Տուբուաի և ուր. կղզիներ: Տարածքը՝ 4,1 հզ. *կմ*², բն.՝ 287 հզ. (2009): Պետ. լեզուները՝ ֆրանս., թայիթիերեն: Վարչ. կենտրոնը՝ Պապեետե: Դրամ. միավորը՝ ֆրանս. խաղաղօվկիանոս. ֆրանկ:

ՊՈԼԻՆԵԶԻԱՑԻՆԵՐ, ազգակից ժողդների (մաորի, սամոացիներ, տոնգացիներ ևն) խումբ, Պոլինեզիայի հիմն. բնակիչները (մինչև 2 մլն, 2010): Լեզուն՝ պոլինեզյան:

ՊՈԼԻՆՅԱԿ (Polignac) Օգյուստ Ժյուլ Արման (1780–1847), ֆրանսիացի քաղ. գործիչ, կոմս, իշխան: 1829–30–ին՝ Ֆրանսիայի Կառ–յան ղեկ. և ԱԳ նախարար: Պ–ի կառ–յունը 1830–ի հուլիսին հրատարակել է 1814–ի խարտիան խախտող հրամանագրեր (սահմանել է սահմանադր. միապետություն), որոնք անմիջական առիթ են դարձել ***Հուլիսյան հեղափոխության*** (1830) համար:

ՊՈԼԻՆՈՄՅԱՅԻՆ ՄԱՆՐԱԹԵԼ, յուրահատուկ կառուցվածքով վիսկոզային մանրաթել, որը հատկություններով մոտ է բամբակին: Օժտված է մեծ ամրությամբ ու ձևի կայունությամբ, ջրում և ալկալիներում քիչ փոփոխելիությամբ, աննշան ճմռթելիությամբ ու փխրունությամբ: Կիրառվում է բարակ թելքային բամբակի փոխարեն՝ տարբեր նշանակության գործվածքներ պատրաստելու համար:

ՊՈԼԻՆՈՒԿԼԵՈՏԻԴՆԵՐ, պոլիմեր. օրգ. միացություններ, ստացվում են նուկլեոտիդների մնացորդներից: Բնական Պ. նուկլեինաթթուներն են:

ՊՈԼԻՈՄԻԵԼԻՏ (< հուն. polios – գորշ և myelos – ողնուղեղ), առավելապես երեխաների սուրվիրուս. հիվանդություն: Վարակվում են հիվանդից կամ վիրուսակրից՝ սննդի, ջրի, կեղտոտ ձեռքերի և օդի (հազալիս, խոսելիս) միջոցով: Բնորոշվում է նյարդ. համակարգի ախտահարմամբ, հաճախ՝ լուծանքների առաջացմամբ: Կանխարգելումը՝ իմունացմամբ:

ՊՈԼԻՈՎԻՐՈՒՄՆԵՐ, ԴՆԹ պարունակող աղիք. վիրուսներ (էնտերովիրուսներ), որոնք առաջացնում են մարդկանց և կենդանիների ԿՆՀ–ի ախտահարումներ և լուծանքներ:

ՊՈԼԻՊԵՊՏԻԴՆԵՐ, ամինաթթուների մնացորդներից բաղկացած պոլիմերներ: Օրգանիզմում առաջանում են ամինաթթուներից՝ կենսասինթեզի կամ սպիտակուցների հիդրոլիզի արդյունքում: Ի տարբերություն սպիտակուցների՝ կարող են անցնել կիսաթափանցիկ թաղանթներով: Կենսաբանորեն ակտիվ միացություններ են՝ հակաբիոտիկներ, տոքսիններ, հորմոններ: Տես նաև ***Կենսապոլիմերներ***:

ՊՈԼԻՊԼՈՒԴԻԱ, (< հուն. polyploos – բազմակի և eidos – տեսք), ժառանգ. փոփոխություններ, որոնք ընթանում են օրգանիզմի բջիջներում քրոմոսոմների հավաքակազմի թվի բազմակի ավելացումով: Տարածված է բույսերում (մշակաբույսերի մեծ մասը պոլիպլոիդներ են), բաժանասեռ կենդանիների մեջ հանդիպում է հազվադեպ: Պ–ի հիման վրա ստեղծվել են մշակաբույսերի (օր.՝ շաքարի ճակնդեղի) բարձրբերքատու սորտեր:

ՊՈԼԻՊՆԵՐ (հուն.՝ polypos – բառացի՝ բազմոտանի), 1. հիմնականում ծով. կնիդարիաների նստակյաց (ամրացած) անհատներ են: Հիդրոիդ և սցիֆոիդ Պ. ունակ են միայն վեգետատիվ բազմացման (սեռ. ֆունկցիան կատարում են մեդուզաները) և առաջացնում են գաղութներ: Քաղցրահամ ջրերի հիդրաները և բուստ. Պ. կարող են բազմանալ նաև սեռ. ճանապարհով: 2. Լորձաթաղանթի (քթի խոռոչի, արգանդի, ստամոքսի ևն) էպիթելից առաջացած բարորակ ուռուցք. գոյացություններ: Կարող են խոցոտվել և արյունահոսել: Դիտվում է որպես նախաքաղցկեղ. վիճակ: Բուժումը՝ վիրահատական:

ՊՈԼԻՊՐՈՊԻԼԵՆ, $[-CH_2-CH(CH_3)-]_n$, սինթետիկ պոլիմեր, ***պրոպիլենի*** (պրոպենի) պոլիմերը: Ջերմապլաստիկ է: Օժտված է մեծ ամրությամբ, մաշակայունությամբ, փոքր գազա– և գոլորշաանցանելիությամբ: Լավ դիէլեկտրիկ է: Կիրառվում է մեքենաների դետալներ, խողովակներ, թաղանթներ ևն պատրաստելու համար:

ՊՈԼԻՊՐՈՊԻԼԵՆԱՅԻՆ ՄԱՆՐԱԹԵԼ, սինթետիկ մանրաթել, ձևավորվում է ***պոլիպրոպիլենի*** հալույթից: Պ. մ. կայուն է թթուների, ալկալիների, օրգ. լուծիչների նկատմամբ, օժտված է լավ ջերմամեկուսիչ հատկություններով և թույլ լուսակայունությամբ: Կիրառում են գորգեր, ճոպաններ, զտող և պաստառապատող նյութեր պատրաստելու համար:

ՊՈԼԻՍ (հուն.՝ pólis), ք–պետություն, հասյան սոցիալ–տնտ. և քաղ. կազմ–յան յուրահատուկ ձև Հին Հունաստանում և Իտալիայում: 1–ին–ում պոլիսային համա–

կարգը ծաղկել է մ. թ. ա. V դ–ում, 2–րդ–ում՝ մ. թ. ա. V–III դդ–ում:

ՊՈԼԻՄՊԵՐՄԻԱ, 1. կենդանիների բեղմնավորման ժամանակ մի քանի սերմնաբջիջների թափանցումը ձվաբջջի մեջ: Նորմայում բնորոշ է ներքին սերմնավորմամբ կենդանիների առանձին խմբերի (սարդեր, փափկամարմիններ, միջատներ, շնաձկներ, պոչավոր երկկենցաղներ, սողուններ, թռչուններ): Որպես շեղում՝ նկատվում է մոնոսպերմ կենդանիների, այդ թվում՝ կաթնասունների մոտ: 2. Բույսերի՝ մեկից ավելի (սովորաբար՝ 2) սերմնաբջիջների թափանցումը ձվաբջջի և սաղմն. պարկի 2–րդային կորիզի մեջ:

ՊՈԼԻՍՏԻՐՈԼ, $[-CH_2-CH(C_6H_5)-]_n$, *պոլիստրոլի* գծային պոլիմերը: Ապակենման, թափանցիկ նյութ է: Բարձր կարծրությամբ, խոնավակայուն, ջերմապլաստիկ, հեշտ ներկվող, քիմիապես կայուն դիէլեկտրիկ է: Փխրուն է և տաքացնելիս անկայուն: Ավելի լավ կիրառ. հատկություններ ունեն Պ–ի համապոլիմերներն ակրիլոնիտրիլի, α–մեթիլստիրոլի և կաուչուկի հետ: Օգտագործում են կենցաղ. առարկաներ, խաղալիքներ, թաղանթներ, հարվածակայուն Պ.՝ ռադիոսարքերի, սառնարանների պատյաններ, ավտոմեքենայի մասեր, կահույք, խողովակներ ևն պատրաստելու համար:

ՊՈԼԻՎԱՆՈՎԱ Մարիա Սեմյոնովնա (1922–1942), ՀՄՊ–ի մասնակից, խորհրդ. դիպուկահար: ԽՄ հերոս (1943, հետմահու): Գերմանացի զինվորներով շրջապատված՝ Պ. և Ն. Վ. Կովշովան իրենց պայթեցրել են նռնակով:

ՊՈԼԻՎԻՆԻԼԱՑԻՆ ՍՊԻՐՏ, $[-CH_2-CH(OH)-]_n$, *պոլիվինիլացետատի* օճառացման արգասիքը: Սպիտակ, պինդ նյութ է: Օճառացումը կատարվում է ուժեղ թթուների և ալկալիների առկայությամբ՝ մեթիլ սպիրտի միջավայրում: Օգտագործվում է մանրաթելեր, թաղանթներ ստանալու համար, նաև որպես էմուլգարար, թանձրացնող նյութ և սոսինձ, ցածրմոլ. Պ. ս.՝ սննդի արդ–յան և բժշկության (դեղանյութերի բաղադրիչ, արյան պլազմայի փոխարինող) մեջ:

ՊՈԼԻՎԻՆԻԼԱՑԵՏԱԼՆԵՐ, **պոլիացետալներ**, պոլիվինիլ սպիրտի ացետալները: Անգույն, ամորֆ, պինդ նյութեր են: Էլեկտրամեկուսիչ են, լավ կպչում են մետաղին, ապակուն և այլ նյութերի: Ստացվում են պոլիվինիլացետատը հիդրոլիզելով և առաջացած պոլիվինիլսպիրտն ալդեհիդի հետ միացնելով: Առավել օգտագործելի են **պոլիվինիլֆորմալը**՝ էլեկտրամեկուսիչ լաքեր, փայտի, ռետինի, տեքստալիտների ևն սոսինձներ, և **պոլիվինիլբուտիրալը**՝ պլաստիֆիկացված թաղանթներ, անբեկոր ապակի (տրիպլեքս), սոսինձներ և լաքեր պատրաստելու համար:

ՊՈԼԻՎԻՆԻԼԱՑԵՏԱՏ, $[-CH_2-CH(OOCCH_3)-]_n$, *վինիլացետատի* պոլիմերը: Անգույն, պինդ նյութ է: Լուծվում է բազմաթիվ օրգ. լուծիչներում, չի լուծվում ջրում, բենզինում, անօրգ. թթուներում: Պլաստիկ է, սառը մամլվող: Ունի տարբեր նյութերի կպչելու հատկություն: Հումք է *պոլիվինիլային սպիրտի* և *պոլիվինիլացետալների* սինթեզի համար, օգտագործվում է նաև ներքին և արտաքին հարդարման ներկեր, լավորակ բետոններ, թղթի, կաշվի, փայտի գործվածքի սոսինձներ, մաստակ ստանալու համար:

ՊՈԼԻՎԻՆԻԼԲՈՒՏԻՐԱԼ, ստացվում է պոլիվինիլային սպիրտի և կարագալդեհիդի փոխազդեցությամբ: Սպիտակ, պինդ, մթնոլորտա– և մաշակայուն նյութ է: Ունի տարբեր նյութերի կպչելու և օպտիկ. հատկություններ: Կիրառվում է հակակոռոզիային և գեղազարդիչ ծածկույթներ ստանալու համար:

ՊՈԼԻՎԻՆԻԼԻԴԵՆՔԼՈՐԻԴ, $[-CH_2-CCl_2-]_n$, *վինիլիդենքլորիդի* գծային պոլիմերը: Հատկություններով նման է *պոլիվինիլքլորիդին*: Պ–ից ստանում են մանրաթելեր, լաքեր, պատրաստում խողովակներ:

ՊՈԼԻՎԻՆԻԼՔԼՈՐԻԴ, $[-CH_2-CHCl-]_n$, *վինիլքլորիդի* գծային պոլիմերը: Ձերմապլաստիկ, սպիտակ, կենսաբանորեն պասսիվ նյութ է: Ունի մեխ. բավարար ամրություն, դիէլեկտրիկ է: Ձերմակայունությունը և լուծելիությունը մեծացնելու նպատակով Պ. քլորացնում են (պերքլորվինիլային խեժեր): Ստանում են կարծր և պլաստիֆիկարարներ պարունակող փափուկ կամ կիսափափուկ պոլիվինիլքլորիդ. պլաստմասսաներ, որոնցից պատրաստում են արհեստ. կաշի, թաղանթներ, խողովակներ, ձայնապնակներ, կենցաղ. իրեր, մանրաթելեր, լաքեր ևն:

ՊՈԼԻՎԻՆԻԼՔԼՈՐԻԴԱՅԻՆ ՄԱՆՐԱԹԵԼ, սինթետիկ մանրաթել, ստացվում է պոլիվինիլքլորիդի կամ նրա ածանցյալների լուծույթներից: Ունի շատ ցածր ջերմա– և էլեկտրահաղորդականություն, հրակայունություն, կայուն է բազմաթիվ քիմ. ռեագենտների նկատմամբ: Պ. մ–ից պատրաստում են զտող և չայրվող ծալազարդելի կտորեղեն, հատուկ հագուստ, ջերմամեկուսիչ նյութեր, բուժիչ սպիտակեղեն: Հիմն. առևտր. անվանումներն են՝ քլորին, վինոն, ռովիլ, տևիռոն:

ՊՈԼԻՎԻՆԻԼՖՈՐՄԱԼ, սինթետիկ պոլիմեր, պոլիվինիլային սպիրտի և ֆորմալդեհիդի փոխազդեցության արգասիքը: Սպիտակ, պինդ նյութ է, լավ դիէլեկտրիկ: Կիրառվում է էլեկտրամեկուսիչ լաքերի, ինչպես նաև ԲՖ տիպի սոսինձների արտադր–յան մեջ:

ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, սովորողներին տեսականորեն ու գործնականորեն արտադր–յան սկզբունքներին ծանոթացնող կրթություն: Նպաստում է աշխ. հմտությունների ու ունակությունների ձևավորմանը, մասնագիտ. կողմնորոշմանը:

ՊՈԼԻՏԵՆԻԱ (< *պոլի*... և լատ.՝ taenia – ժապավեն), հսկա բազմաթելքավոր (պոլիտենային) քրոմոսոմների առկայությունը որոշ մարմն. բջիջների կորիզներում: Քրոմոսոմների բջջ. կիսամբ չուղեկցվող բազմակի կրկնապատկման արդյունք է: Հայտնաբերվել է մի շարք երկթևանիների թքագեղձերում, նաև բազմաթիվ բույսերում և նախակենդանիների մեջ:

ՊՈԼԻՏԻՈՒ (Politis) Ֆոտոս (1890–1934), հույն ռեժ.: Հուն. թատրոնի ժամանակակից պրոֆեսիոնալ ռեժ. արվ–ի հիմնադիրը: 1919–ից՝ «Հունական թատրոնի ընկերություն» թատերախմբի ռեժ. (Սոֆոկլեսի «Էդիպ արքա», Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր»), 1932–ից՝ Ազգ. թատրոնի (Աթենք) առաջին ռեժ. (Էվրիպիդեսի «Հեկաբե», Վ. Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը», ևն):

ՊՈԼԻՏԵՐ (Politzer) Ադամ (1835–1920), ավստրիացի բժիշկ, ականջաբուժության հիմնադիրներից: Ականջի հիվանդությունների առաջին ամբիոնի և կլինիկայի կազմակերպիչը: Առաջարկել է ականջի հիվանդությունների ախտորոշման և բուժման մի շարք մեթոդներ (այդ թվում՝ միկրովիրաբուժ.):

ՊՈԼԻՑԻԱՆՈ (Poliziano, Ամբրոջինի) Անջելո (1454–1494), իտալացի բանաստեղծ, հումանիստ, բանասեր: Հեղինակ է «Ասք Օրփեոսի մասին» (բեմ.՝ 1480) չափածո դրամայի, «Նոթեր Պացցիի դավադրության մասին» (1478) պատմ. երկի, նաև իտալ–ով, լատ–ով, հուն–ով գրած բանաստեղծությունների, բանասիր. աշխ–ների:

ՊՈԼԻՑԻՏԵՄԻԱ, մարդու արյունաստեղծ համակարգի լեյկոզների խմբի քրոնիկ. հիվանդություն՝ առավելապես էրիթրոցիտաստեղծման (էրիթրոպոեզ) խանգարմամբ, արյան մեջ հեմոգլոբինի և էրիթրոցիտների պարունակության շատացմամբ, դեմքի բալա–կարմիր գունավորմամբ և այլ ախտանշաններով: Բարդությունները՝ արյունահոսություն, արյան անոթների թրոմբոզ:

ՊՈԼԻՈՒՐԵՏԱՆԱՅԻՆ ԼԱՔԵՐ, իզոցիանատների և հիդրօքսիլ խմբերով միացությունների լուծույթներն օրգ. լուծիչներում (մակերևույթի երեսպատումից հետո բաղադրիչները փոխազդում են՝ առաջացնելով պոլիուրետաններ): Պատվածքները ճկուն են, մաշակայուն, օժտված են հակակոռոզիոն և էլեկտրամեկուսիչ հատկություններով: Պ. լ., ինչպես դրանց հիմքով ներկերն ու նախաներկերը, պահպանում են քիմ. և ռադիոէլեկտրոն. սարքերը, նավերի և ինքնաթիռների դետալները, շին. կառուցվածքները ևն:

ՊՈԼԻՈՒՐԵՏԱՆԱՅԻՆ ՄԱՆՐԱԹԵԼ, ստացվում է պոլիուրետանների լուծույթներից կամ հալույթից: Մեխ. հատկություններով նման է ռետինե թելերին, ավելի կայուն է մաշվի ճարպի, քրտինքի, օրգ. լուծիչների նկատմամբ: Ունի ցածր ջերմա– և լուսակայունություն: Կիրառվում է իրանականների, սպորտ. հագուստի արտադր–յան համար:

ՊՈԼԻՈՒՐԵՏԱՆՆԵՐ, *պոլիմերներ*, որոնց մոլ–ները պարունակում են –NHC(O)O– խմբեր, ստացվում են երկ– կամ պոլիիզոցիանատների և երկ– կամ եռատոմանի սպիրտների փոխազդեցությամբ: Կիրառվում են պոլիուրետանային մանրաթելերի, փրփրապլաստների, սոսինձների, լաքերի արտադր–յան մեջ: Ճկուն Պ. (ուրետանային կաուչուկներ) մաշակայուն ռետինների հիմքն են:

ՊՈԼԻՈՒՐԻԱ, (< *պոլի*... և հուն.՝ uron – մեզ), տես *Շատամիզություն*:

ՊՈԼԻ-ԹԱՌԱՖՏՈՐԷԹԻԼԵՆ, տեֆլոն, ֆտորոպլաստ–4, $(-C_2F_4-)_n$, *քառաֆտորէթիլենի* պոլիմերը: *Պլաստմասսա* է՝ օժտված ֆիզ. և քիմ. հազվագյուտ հատկություններով, և լայնորեն կիրառվում է տեխնիկայում ու կենցաղում:

ՊՈԼԻՕԼԵՖԻՆՆԵՐ, $[-CH_2C(RR)-]_n$, *օլեֆինների* պոլիմերները: Առավել տարածված են պոլիէթիլենը և պոլիպրոպիլենը:

ՊՈԼԻՖԱԳԻԱ, (< *պոլի*... և հուն.՝ phagein – ուտել, խժռել) (բժշկ.), **բազմակերություն**, սննդի չափից ավելի օգտագործումը. լինում է ֆիզիոլոգ., մանկ. տարիքում օրգանիզմի աճով պայմանավորված կամ ախտաբան., օր՝ շաքարախտի դեպքում: Որոշ հիվանդությունների ժամանակ Պ. հանգեցնում է անհագ քաղցի (*բուլիմիա*) զգացողության:

ՊՈԼԻՖԻԼԻԱ, (< *պոլի*... և հուն.՝ phylon – ցեղ, սեռ), օրգանիզմների խմբի (տաքսոն) ծագումը 2 և ավելի նախնիների

խմբից, որոնք կապված չեն մոտ ազգակց. կապերով: Իրականանում է զուգամետության (կոնվերգենցիա) կամ համակեցության (սիմբիոզ) միջոցով:

ՊՈԼԻՖՈՆԻԱ, (< *պոլի...* և հուն.՝ phone – ձայն), բազմաձայնության տեսակ, համադրված են միաժամանակ հնչող 2 կամ ավելի ինքնուրույն մեղեդիներ: Տարբերում են իմիտացիոն, կոնտրաստ., ենթաձայն. տեսակները, նաև նրանց զուգորդումները: Կարևոր դեր ունի ձևակառուցման, կերպարների զարգացման և բացահայտման մեջ: Հայկ. մոնոդիկ երաժշտության բազմաձայն մշակման առաջին փորձերն արվել են XIX դ–ի 2–րդ կեսերին: Կոմիտասն այդ խնդիրը լուծել է՝ կիրառելով բազմապլան–բազմատոնալ պոլիֆոնիկ հյուսվածքներ:

ՊՈԼԼԱԿ (Pollack) Միխայ (1773–1855), հունգար ճարտ.: Պ–ի նախագծած Բուդապեշտի Ազգ. թանգարանի շենքին (1837–47) և մյուս կառույցներին բնորոշ են *կլասիցիզմին* հատուկ մոնումենտալությունը, ձևերի զուսպ պարզությունը:

ՊՈԼԼԱՅՈԼՈ (Pollaiuolo, Բենչի), Վաղ Վերածննդի շրջանի իտալացի նկարիչների ընտանիք: **Անտոնիո դել Պ.** (1432/33–1498), քանդ., ոսկերիչ, փորագրող: Գործերում նկատելի է հետաքրքրությունը մարդու մարմնի շարժումների, մեխանիկայի, անատոմիայի նևի նկատմամբ («Հերակլեսը և Անթեոսը», մոտ 1465, Սիքստոս IV պապի դամբարանը, Վատիկան, 1484–93): Եղբայրը՝ **Պիեռո Պ.** (մոտ 1441–մոտ 1496), գեղանկարիչ, աշխատել է ինքնուրույն, նաև եղբոր հետ:

ՊՈԼԼԱՔ (Pollack) Սիդնի (1934–2008), ամերիկացի կինոռեժ.: Նկարահանել է «Ուժասպառ ձիերին սպանում են, այդպես չէ՞» (1969), «Մենք այդպիսին ենք եղել» (1973), «Կոնդորի երեք օրը» (1975), «Առանց չար դիտավորության» (1981), «Թուրսի» (1982), «Սաբրինա» (1995), «Թարգմանչուհին» (2005) և այլ ֆիլմեր:

ՊՈԼԼՈՔ (Pollock) Ջեքսոն (1912–1956), ամերիկացի գեղանկարիչ: 1940–ական թթ–ին հանդես է եկել որպես արստրակտ էքսպրեսիոնիզմի առաջնորդ: Նմանակելով «պատահական» գուն. և գծ. էֆեկտներ՝ Պ. օգտվել է «դրիփինգի» (կաթեցնել) տեխնիկայից («Երփնագիր», 1948), որի դեպքում նկարում են առանց վրձնի՝ ներկերը կաթեցնելու եղանակով:

ՊՈԼԼՈՒՔՍ (β Gem/ Երկվորյակների β), Երկվորյակների համաստեղության և երկնքի ամենապայծառ աստղը: Երկվորյակների α–ից (*Կաստոր*) պայծառ է, չնայած նշանակված է [աստղագետ Յ. Բայեր (1572–1625)] β–ով:

ՊՈԼԿԱ, (չեխ.՝ polka), 1. չեխ. ժող. և պարահանդես. պար: Երաժշտ. չափը՝ 2/4: Տարածվել է Եվրոպայում XIX դ–ի կեսին: 2. Գործիք. պիես (Ա. Դվորժակ, Բ. Սմետանա, Պ. Ի. Չայկովսկի և ուր.):

ՊՈԼԿԻ ՆԵՂՈՒՅՑ, Հնդ. օվկ–ում՝ Հնդստանի թ–կղզու և Շրի Լանկա կղզու միջև: Միացնում է Բենգալյան և Մանարյան նեղուցները: Երկ.՝ 150 *կմ*, առլցն լայն.՝ 55 *կմ*, խոր.՝ 2–9 *մ*:

ՊՈԼՅԱԿՈՎ, Ալեքսանդր Մարկովիչ (ծ. 1945), ռուս ֆիզիկոս–տեսաբան: ՌԳԱ թղթ. անդամ (1984): Տարր. մասնիկների տեսության մեջ զարգացրել է տեղագր. եղանակը: Ներմուծել է «ինստանտոններ» եզրույթը:

ՊՈԼՅԱԿՈՎ, Լեոնիդ Միխայլովիչ (1906–1965), ռուս ճարտ.: Մոսկվայի մետրոպոլիտենի կայարանները (օր.՝ «Օկտյաբրսկայա»–ն, 1949), «Լենինգրադսկայա» հյուրանոցի բարձրահարկ շենքը (1949–53), Վոլգա–Դոն ջրանցքի ճարտ. ձևավորումը (1952) աչքի են ընկնում շեշտված մոնումենտալ հանդիսավորությամբ:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

ՊՈԼՅԱԿՈՎ, Յուրի Միխայլովիչ (ծ. 1954), ռուս գրող: 2001–ից՝ «Լիտերատուրնայա գազետա»–ի գլխ. խմբ.: Հեղինակ է «Արտակարգ իրավիճակ շրջանի մասշտաբով» (1985, կինոնկար՝ 1988), «Հարյուր օր մինչև հրամանը» (1987), «Ապոֆեգեյ» (1989) վիպակների, «Ուլիկը կաթի մեջ» (1995, հայ.՝ 2008), «Մկների արքան» (2005, հայ.՝ 2012) և այլ վեպերի: Հայ. հրատարակվել է նաև «Ընկածների երկինքը» (2013) վիպակը:

ՊՈԼՅԱԿՈՎ, Վալերի Վլադիմիրովիչ (ծ. 1942), ռուս տիեզերագնաց օդաչու, բժիշկ–հետազոտող: Բժշկ. գիտ. դ–ր (1999), պրոֆ. (1999): ԽՄ (1989), ՌԴ (1995) հերոս: 1–ին թռիչքը կատարել է «Սոյուզ ՏՄ–6» տիեզերանավով և «Միր» ուղեծր. համալիրով (240 օր 22,5 *ժ*), վայրէջք կատարել «Սոյուզ ՏՄ–7»–ով: 2–րդ անգամ «Սոյուզ ՏՄ–18»–ով և «Միր» ուղեծրակայանով՝ 437 օր 18 *ժ* (XX դ–ի ամենատևական տիեզ. թռիչքը), վայրէջքը՝ «Սոյուզ ՏՄ–20»–ով:

ՊՈԼՅԱԿՈՎ ՆԵՐ, երկթող. կապալառու, ձեռնարկատեր և բանկիր եղբայրներ Ռուսաստանում: **Յակով Սոլոմոնովիչ Պ.** (1832–1909), ֆինանսիստ, 1860–ական թթ–ի վերջերին եղբայրների հետ կառուցել է երկթող–ներ և հիմնադրել մի շարք բանկեր: **Սամուիլ Պ.** (1837–1888), բանկիր, բարեգործ: Կառուցել է 2,6 հգ. *կմ* երկաթգիծ, հիմնադրել (եղբայրների հետ) երկթող. ընկ–ը, Հվ–ռուս. քարածխի արդ–յան ընկ–ը, Մոսկվայի, Դոնի, Ազով–Դոնյան բանկերը, ուս., մշակութալուսավորչ., բժշկ. և բարեգործ. հաստատությունները: **Լազար Պ.** (1842–1914), բանկիր և հաս. գործիչ: 1870–ից զբաղվել է բանկ. գործով և դարձել Մոսկվայի առաջատար բանկիրը:

ՊՈԼՅԱՆՍԿԻ Անատոլի Տրոֆիմովիչ (1928–1993), ռուս. ճարտ.: ԽՍՀՄ ժող. ճարտ. (1980): ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի ակադ. (1979): Հեղինակ է Ղրիմի «Արտեկ» մանկ. ճամբարի (1960–70–ական թթ.), համահեղ.՝ Բրյուսելի համաշխ. ցուցահանդեսի ԽՍՀՄ տաղավարի (1958) նախագծերի: ԽՍՀՄ (1967), ՌԴ (1995, հետմահու) Պետ. մրց–ներ:

ՊՈԼՅԱՆՍԿԻ Դմիտրի Ստեպանովիչ (1917–2001), խորհրդ. պետ. և կուս. գործիչ: 1958–62–ին՝ ՌԽՖՍՀ ՆԽ նախագահ: 1965–73–ին՝ ԽՍՀՄ ՆԽ նախագահի 1–ին տեղակալ: 1973–76–ին՝ ԽՍՀՄ գղտ–յան նախարար:

ՊՈԼՅԱՆՍԿԻ Յուրի (Գեորգի) Իվանովիչ (1904–1993), ռուս. կենսաբան: ՌԳԱ թղթ. անդամ (1979): Սոց. աշխ. հերոս (1990): Աշխ–ները վերաբերում են նախակենդբ–յանը (նախակենդանիների ձևաբանությանը, կարգաբանությանը և ֆիզիոլոգիային), մակաբուծաբանությանը, էվոլյուցիայի տես. խնդիրներին:

ՊՈԼՅԱՐՈԳՐԱՖԻԱ, **բևեռագրություն**, որակ. և քանակ. վերլուծության էլեկտրաքիմ. եղանակ, ինչպես նաև քիմ. ռեակցիաների կինետիկայի ուսումնասիրություն՝ հիմնված հետազոտվող նյութի անդիկ–կաթիլային էլեկտրոդով էլեկտրոլիզի ժամանակ վոլտամպերային կորերի (բևեռագրեր) ուսումնասիրության վրա: Կիրառում են, օր., մետաղների խառնուկները որոշելու համար:

ՊՈԼՅԱՐՈՒԴԵՆԵՐ, թափանցիկ թաղանթներ, որոնք ունեն չբևեռացած լույսը գծային բևեռացված լույսի վերափոխելու հատկություն:

ՊՈԼՅԱՐՈՆ, քվազիմասնիկ, որը բյուրեղացանցում իր հարուցած ձևախախտման հետ տեղաշարժվող հաղորդականության էլեկտրոն է (կամ խոռոչ):

ՊՈԼՈԳՈՎԱ, Աղելաիդա Գերմանովնա (1923–2008), ռուս. քանդ.: Ռուսաստանի Գեղարվ–ի ակադ–ի անդամ (2001): Ստեղծել է արտահայտիչ (հաճախ՝ բազմազույն) խեցե կոմպոզիցիաներ, որոնք ակտիվ փոխներգործության մեջ են միջավայրի հետ («Տղա, որից թռչունները չեն վախենում», 1964, «Մայրություն», շարք, 1980–ական թթ.): ԽՍՀՄ Պետ. (1989), ՌԴ նախագահի (1999) մրց–ներ:

ՊՈԼՈՋ ՄՈՒԿՈՒՉ (Մելքոնյան Մկրտիչ Ղազարոսի, 1881–1931), զվարճախոս–առակախոս: «Պոլոզ» է կոչվել բարձրահասակ լինելու համար: Պ. Մ–ի անունով պահպանվել են Գյումրիի խոսվածքով պատմվող (նաև գրառված) սոցիալ–կենցաղ., հաս–քաղ., խոհափիլ. թեմաներով երգիծ. զրույցներ, անեկդոտներ, առակներ, զվարճախոսություններ:

ՊՈԼՈԶՆԵՐ, **փոքր վիշապօձեր**, լորտուների ընտանիքի սողունների սեռ: Երկ.՝ մինչև 2,4 *մ*: Հայտնի է 37 տեսակ: Պ. են կոչվում նաև լորտուների ընտանիքի այլ սեռերի ներկայացուցիչներ, օր.՝ մեծաչք Պ., հովազային Պ. (գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում), մագլցող Պ–ի շարքին է դասվում էսկուլապի օձը (էսկուլապի Պ.): Կծածը մարդու համար վտանգավոր չէ, սակայն ցավոտ է:

«ՊՈԼՈԺԵՆԻԵ» («Положение»), կանոնադրություն, որով պետք է առաջնորդվեր Հայ եկեղեցին Ռուս. կայսրության տարածքում: 1836–ի մարտի 11–ին վավերացրել է Նիկոլայ I կայսրը: Այն էապես կրճատում էր Ամենայն հայոց կաթողիկոսի և ՀԱԵ իրավասությունները, վերջինիս կախման մեջ դնում ցար. կառ–յունից: Ժողդ–ն այն համարել է հայոց ազգ. իրավունքներն ու ավանդույթները սահմանափակող օրենք: Դադարել է գործելուց 1917–ին:

ՊՈԼՈՆԵԶ [ֆրանս.՝ (danse) polonaise – լեհ. (պար)], 1. հանդիսապար, տարածվել է XIX դ–ից: Սերել է լեհ. ժող. պարից: Եղել պալատ. պար Ֆրանսիայում և այլ երկրներում: Երաժշտ. չափը՝ 3/4: 2. Գործիք. պիես (Յ. Ս. Բախ, Ֆ. Շոպեն, Մ. Կ. Օգինսկի և ուր.):

ՊՈԼՈՆԻՈՒՄ (Polonium), Po, տարրերի պարբեր. համակարգի VI խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 84, ա. զ.՝ 208,9824: Ճառագայթաակտիվ է, առավել կայուն իզոտոպը՝ 209 P_o ($T_{1/2}$՝ 102 *ժ*): Անվանումը՝ լատ. Polonia – Լեհաստան անունից (տվել է Մարի Կյուրի Սկլադովսկայան): Փափուկ արծաթասպիտակ մետաղ է, խտ.՝ 9,136 $գ/սմ^3$, $t_{հալ.}$՝ 254°C: ^{210}Po–ն ալֆա–ճառագայթների, բերիլիումի հետ խառնուրդը նեյտրոնների լաբորատոր. աղբյուր է:

ՊՈԼՈՆՍԿԻ Գեորգի Իսիդորովիչ (1939–2001), ռուս. դրամատուրգ, սցենարիստ: ՌԴ արվ. վաստ. գործիչ (1997): Հեղինակ է «Իմ սիրտը մեկն է» (բեմ.՝ 1961), «Մայիսյան երկու երեկո» (1965), «Դրամա՝ զգացմունքի պատճառով» (1975), «Կրկնուսույցը» (բեմ.՝ 1978) պիեսների, «Կապրենք մինչև

երկուշաբթի» (1968), «Թարգմանություն անգլերենից» (համահեղ., 1973), «Բանալի առանց փոխանցման իրավունքի» (1976) և այլ կինոսցենարների: Հայ. հրատարակվել է «Դպրոցական տարիներ» (1986) վիպակների ժող–ը: ԽՍՀՄ Պետ մրց. (1970):

ՊՈԼՈՆՄԿԻ Յակով Պետրովիչ (1819–1898), ռուս. գրող: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1886): Հեղինակ է «Գնչուհու երգերը», «Ճգնավոր կինը» և քնար. այլ բանաստեղծությունների, որոնց զգալի մասը դարձել է ժող. երգեր, «Ծղրիդ-երաժիշտը» (1859) հեքիաթ-պոեմի, նաև վիպակների, վեպերի: 1841-ին գրել է «Արարատ» բանաստեղծությունը, «Սայաթ–Նովա» («Кавказ», 1851, №1, 2) պատմագեղ. ակնարկը: Եղել է Հայաստանում: Հայտնի են «Մի սպասիր», «Կովկասից վերադառնալիս» բանաստեղծությունները՝ նվիրված հայուհի Սոֆյա Գուլզազին. վերջինս նաև «Թիֆլիսյան խրճիթներ» պատմվածքի և «Դարեջան» պատմ. դրամայի կերպարների նախատիպն է:

ՊՈԼՈՏԵՆՈՎ Ալեքսեյ Գերասիմովիչ (1838–1907/08), մաշկաբանության հիմնադիրներից Ռուսաստանում: Մաշկ. հիվանդությունները դիտել է որպես ամբողջ. օրգանիզմի հիվանդություններ, մշակել մաշկախտերի (դերմատոզներ) ախտածնային բուժման սկզբունքները:

ՊՈԼՉՈՒ (Myoxus glis), *քնամոլների* ընտանիքի կաթնասուն կենդանի: ՀՀ-ում տարածված է մինչև 2000 *մ* բարձր-ներում, հս–արլ., մասամբ՝ նաև Սյունիքի մարզի Տաթև գ–ի շրջակա անտառներում: Մարմնի երկ.՝ մինչև 185, պոչինը՝ 160 *մմ*: Ապրում է ծառերի փչակներում, արմատների մեջ փորած ստորգետնյա բներում, անձավներում և այլուր: Մնվում է սերմերով, ընկույզներով, հատապտուղներով, երբեմն՝ միջատներով ևն: Ձմեռ. քուն է մտնում մեծ մասամբ փչակներում կամ ստորգետնյա բներում: Երբեմն վնասում է այգեգործությանը:

ՊՈԼՍԻ ԲԱՐԲԱՌ, հայ–ի «կը» ճյուղի բարբառ: Խոսվում է Կ. Պոլսում: Ունի երկաստիճան խլազուրկ (բ–փ) բաղաձայն. համակարգ: *Արևմտահայ գրական լեզվի* հիմքում է:

ՊՈԼՏԱՎԱ, ք. Ուկրաինայում, համանուն մարզի վարչ. կենտրոնը՝ Վորսկլա գետի ափին: Բն.՝ 300,5 հզ. (2010): Երկթղ. հանգույց է: Զարգացած են մեքենաշինությունն ու մետաղամշակությունը: Կան թանգարան, «Պոլտավայի դաշտի ճակատամարտ» պատմամշակութ. արգելոց ևն: Ռուս. տարեգրություններում հայտնի է 1171-ից՝ որպես Լատավա (մինչև 1430-ը):

ՊՈԼՏԱՎԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1709, *Հյուսիսային պատերազմի* (1700–21) գլխ. ճակատամարտը ռուս. և շվեդ. զորքերի միջև: Պետրոս I-ի ռուս. բանակը ջախջախել է Կառլ XII-ի շվեդ. բանակին: Պ. ճ-ի շնորհիվ պատերազմում տեղի է ունեցել բեկում՝ հօգուտ Ռուսաստանի:

ՊՈԼՏԱՎԱՅԻ ՄԱՐԶ, վտմ Ուկրաինայում: Տարածքը՝ 28,8 հզ. *կմ*², բն.՝ 1,46 մլն (2013): Վարչ. կենտրոնը՝ *Պոլտավա*:

ՊՈԼՈՆԻՆ Ալեքսեյ Իվանովիչ (1820–1888), ախտաբան. անատոմիայի հիմնադիրներից Ռուսաստանում: Աշխ-ները վերաբերում են բորբոքման ձևաբանությանը և վարակիչ հիվանդություններին:

ՊՈԿԵԼՄԻ ԷՖԵԿՏ, կրկնակի ճառագայթաբեկման առաջացումը համաչափության կենտրոն չունեցող (ոչ գծային բյուրեղներ), հաստատուն էլ. դաշտում տեղադրված բյուրեղներում: Կիրառվում է էլ. դաշտի միջոցով լուս. հոսքերի կառավարման համակարգերում: Հայտնաբերել է գերմանացի ֆիզիկոս Ֆ. Պոկելսը (1865–1913) 1893-ին:

ՊՈԿՈՐՆԻ (Pokorny) Յուլիուս (1887–1970), հրեա լեզվաբան, կելտագետ, հնդեվրոպական: «Թոխարերենի տեղը հնդեվրոպական լեզուների շրջանում» (1969) հոդվածում անդրադարձել է հայ–ին: Հեղինակ է հնդեվրոպ. լեզուների նորագույն համեմատ. բառարանի:

ՊՈԿՈՎԻՐՈՒՍՆԵՐ, ԴՆԹ պարունակող խոշոր վիրուսների ընտանիք: Առաջացնում են մարդու և կենդանիների հիվանդություններ, մաշկի արտահայտված ախտահարումներ, օր.՝ բնական ծաղիկ:

ՊՈԿՐԻՇԵՎ Պյոտր Աֆանասևիչ (1914–1967), ռուս օդաչու, ավիացիայի գեն–մայոր (1955): ԽՄ հերոս (1943–ին՝ կրկնակի): ՀՄՊ-ի ժամանակ՝ կործանիչ ավիացիայի գնդի հրամ., մղել է 60 օդ. մարտեր, խփել է 22, խմբի հետ՝ 7 ինքնաթիռ:

ՊՈԿՐԻՇԿԻՆ Ալեքսանդր Իվանովիչ (1913–1985), ռուս զորապետ, ավիացիայի մարշալ (1972): ԽՄ հերոս (1943–ին՝ կրկնակի, 1944): ՀՄՊ-ի ժամանակ սավառնակախմբի, գնդի, դիվիզիայի հրամ.՝ կործանիչ ավիացիայում: Մղել է 156 օդ. մարտեր, խփել 59 ինքնաթիռ: 1968–71-ին՝ ՀՕՊ-ի զորքերի գլխ. հրամ-ի տեղակալ, 1972–81-ին՝ ԽՍՀՄ ԴՕՍԱԱՖ-ի ԿԿ նախագահ:

ՊՈԿՐՈՎՍԿԻ Բորիս Ալեքսանդրովիչ (1912–2009), ռուս. ռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1961): 1943–82-ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի (1952–63-ին և 1967-ից՝ գլխ. ռեժ.) ռեժ., 1972-ից՝ իր հիմնադրած կամեր. երաժշտ. թատրոնի (Մոսկվա) գեղ. ղեկ. և ռեժ.: Հեղինակ է երաժշտ. թատրոնի և օպեր. ռեժ. արվ-ի մասին գրքի:

ԽՍՀՄ (1947, 1948, 1949, 1950), ՌԴ (1994) Պետ., Լենինյան (1980) մրց-ներ:

ՊՈԿՐՈՎՍԿԻ Իգոր Ալեքսանդրովիչ (1926–2002), ռուս. ճարտ.: ԽՍՀՄ ժող. ճարտ. (1991): Ռուսաստանի Գեղարվ-ի ակադ-ի թղթ. անդամ (2001): Համահեղինակ է Մոսկվայում՝ Պիոներների և դպրոցականների պալատի (1958–62), Զելենոգրադի հատակագծման և կառուցապատման (1962–ից) նախագծերի:

ԽՍՀՄ Պետ. (1975), ՌԴ նախագահի (2001) մրց-ներ:

ՊՈԿՐՈՎՍԿԻ Միխայիլ Նիկոլաևիչ (1868–1932), ռուս. պատմաբան, քաղ. և պետ. գործիչ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1929): Պատմ. դպրոցի հիմնադիր: Հեղինակ է «Ռուսաստանի պատմությունը հնագույն ժամանակներից» (հ. 1–5, 1910–13), «Ռուսաստանի պատմության առավել հակիրճ ակնարկ» (մաս 1–2, 1920) և այլ երկերի:

ՊՈԿՐՈՎՍԿԻ Վալենտին Իվանովիչ (ծ. 1929), ռուս. վարակաբան և համաճարակաբան: ՌԲԳԱ ակադ. (1982, նախագահ՝ 1987–2006-ին): ՌԳԱ ակադ. (2013): Աշխ-ները վերաբերում են մենինգոկոկ. և աղիք. հիվանդությունների, ՁԻՍՀ-ի և վարակ. ախտաբանության հիմնախնդիրներին: ՌԴ ԱՆ գլխ. համաճարակաբան (2001-ից): ՌԴ Պետ. մրց. (1997):

ՊՈԿՐՈՎՍԿԻ Վլադիմիր Ալեքսանդրովիչ (1871–1931), ռուս. ճարտ.: Ճարտ-յան նորռուս. ոճի հիմնադիրներից: Օգտագործելով XVII դ–ի ռուս. ճարտ-յան ձևերը՝ ոճավորել է դրանք մոդեռնի ոգով (բանկ, 1913, Նիժնի Նովգորոդ, վարկ. դրամարկղ, 1916, Մոսկվա):

ՊՈՂԱՐՅԱՆ Նորայր Գարեգինի (1904–1996), բանասեր, մատենագետ, խմբ.: Երուսաղեմի Սբ Հակոբյանց միաբանության անդամ (1928-ից), արք. (1973-ից): 1949–92-ին՝ Երուսաղեմի մտնդ-ի տնօրեն, 1936–39-ին՝ *«Հասկ»* պարբ-ի խմբ.: Հեղինակ է «Հայ գրողներ (Ե–ԺԷ դար)» (1971), «Հայ նկարողներ (ԺԱ–ԺԷ դար)» (1989), «Ծիսագիտութիւն» (1990), «Տաթևանց սերունդ» (1991), «Հայկական խաչեր» (1991), «Հայ գրիչներ (Թ–ԺԷ դար)» (1992), «Հայ եկեղեցւոյ Հաւատոյ հանգանակները» (1993), «Գրիգոր Նարեկացի-ներբողներ» (1995), «Ժամակարգութիւն (ԺԶ դար)» (1996) բանասիր., պատմագիտ., աստվածաբան. աշխ-ների: Կազմել է Երուսաղեմի մտնդ-ի հայկ. ձեռագրերի ցուցակը (հ. 1–11, 1966–91), խմբագրել և հրատարակել է «Գիրք թղթոց»-ի (1994) գիտ. բնագիրը:

ՊՈՂԻԿՅԱՆ Աբո Շահենի (ծ. 1956), խմբ.: 1990–91-ին՝ «Երկիր» (Երևան) օրաթերթի հիմնադիր-խմբ., 1985–90 և 2008-ից՝ ՀՅԴ «Ասպարէզ» (Լոս Անջելես) օրաթերթի գլխ. խմբ.:

ՊՈՂՈՍ (Սավուղ, ծ. թ. անհտ–մոտ 65), *Հիսուս Քրիստոսի* 12 առաքյալներից, գրող, քարոզիչ: Սկզբում ակտիվորեն մասնակցել է քրիստոնյաների դեմ հալածանքներին, սակայն դարձի գալուց հետո դարձել է քրիստ. հավատի մոլի քարոզիչ: Պ-ի միսիոներ. ճանապարհորդություններն ու քրիստ. համայնքների հիմնադրման մասին նկարագրությունները «Գործք Առաքելոց»-ի կարևոր մասն են կազմում: Մոտ 58-ին ձերբակալվել է Երուսաղեմում, որպես Հռոմի քաղաքացի՝ պահանջել է, որ իրեն դատի կայսրը: 60-ին Պ-ին տեղափոխել են Հռոմ: Գլխատվել է Ներոն կայսեր օրոք՝ քրիստոնյաների դեմ իրականացրած հալածանքների ժամանակ: Պ-ին է վերագրվում Նոր կտակարանի 14 նամակ, որտեղ շարադրված գաղափարները մեծ ազդեցություն են թողել քրիստ. աստվածաբան. մտքի վրա: Ժամանակակից աստվածաշնչագիտ-յունը հերքում է Պ-ին վերագրվող որոշ նամակներ:

ՊՈՂՈՍ, **Պաւղոս**, XIII դ–ի քարգործ վարպետ: Նրա 3 խաչքարերից (Գոշավանք) մեկը (մեջտեղից կիսված) պահվում է ՀՊԹ-ում: Կերտվածքներին բնորոշ են նրբահյուս զարդերը, «գեղանկարչական» թեթևությունը: Նրա անունը պահպանվել է միայն Գոշավանքի Սբ Հոգու մատուռի խաչքարի վրա, խաչքարերից մեկի վրա էլ պահպանվել է թվականը (1291):

ՊՈՂՈՍ VI (Paulus, 1897–1978), Հռոմի պապ՝ 1963-ից: Միլանի արք. (1953), կարդինալ (1958): Պ. VI-ի օրոք իրականացել են մի շարք բարեփոխություններ ժամերգության մեջ, Հռոմ. կաթոլիկ եկեղեցու կառուցվածքում և սոցիալ. ուսմունքում: 1964-ին հանդիպել է Կ. Պոլսի պատրիարքի հետ: 1970-ին Վատիկանում *Վազգեն Ա Պալճյանի* հետ քննարկել է եկեղեցիների մերձեցման հարցեր:

ՊՈՂՈՍ Ա ՍՄԵՑԻ (մ. թ. անհտ–1382), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1374-ից: Պայքարել է Կիլիկիայի թագավոր Լևոն Զ-ի լատինամետ քաղ-յան դեմ: Երբ Եգիպտոսի սուլթանությունը գրավել է (1375) Սիսը, Պ. Ա. Ս. գերեվարվել է Հալեպ, ապա՝ Կահիրե: Նույն թվականի վերջին վերադարձել

է Սիս և աթոռակալել Հալեպի ամիրայի իշխանության ներքո:

ՊՈՂՈՍ Բ ԳԱՌՆԵՑԻ (ծ. թ. անհտ–1430), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1418–ից: 1415–18–ին՝ Երուսաղեմի հայոց պատրիարք: Սսում գահընկեց է արել *Գրիգոր Ը Խանձողաւրին*, դարձել կաթողիկոս: Կառուցել է Սբ Անանա կաթողիկոսանիստ վանքը, գեղազարդել Սսի վանքը: Թունավորել են կաթողիկոս. աթոռն Աղթամար տեղափոխելու կողմնակիցները:

ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ, **Պողոս փաշա Նուբարյան** (1851–1930), հաս–քաղ. գործիչ: *Նուբար փաշայի* որդին: 1878–79 և 1891–1898–ին՝ Եգիպտոսի երկթղ–ների վարչության տնօրեն: Նախաձեռնել է *Հայկական բարեգործական ընդհանուր միության* (1906) հիմնադրումը: Հայկ. բարենորոգումների հարցը եվրոպ. տերություններին ներկայացնելու նպատակով (տես *Հայկական բարենորոգումներ 1912–14*) *Գևորգ Ե Սուրենյանցը* Պ. Ն–ին նշանակել է Ազգ. պատվիրակության նախագահ: Պ. Ն. ֆինանսավորել է հայրենադարձող հայերի համար Երևանի մոտակայքում ավանի կառուցումը, որը նրա անունով կոչվել է Նուբարաշեն:

ՊՈՂՈՍ ՍԱՄՈՍԱՑԻ (200–275), Անտիոքի եպս.՝ 260–ական թթ–ին: Պ. Ս–ու ուսմունքը, որտեղ մերժվել է Հիսուս Քրիստոսի աստված. բնությունը, Անտիոքի ժողովում (268) համարվել է հերետիկոսություն:

ՊՈՂՈՍ ՏԱՐՈՆԱՑԻ, **Պողոս Վարդապետ** (ծ. թ. անհտ–1123), փիլ., դավանաբան, մատենագիր, Մշո Առաքելոց վանքի առաջնորդ: Ի պատասխան հույն փիլ. և թարգմանիչ Թեոփիստեի հունադավան բովանդակությամբ ուղերձի՝ 1101–ին գրել է «Թուղթ ընդդէմ գրոյն ԹԷոփիստեայ…» երկը (1122–ին ընդարձակել է դավանաբան.նոր ճառերով, հրտ.՝ 1752): Հեղինակ է նաև «Վերլուծութիւն կարգաց եկեղեցւոյ...», «Յաղագս քառասնորդաց պահոց», «Յաղագս առաջաւորաց պահոց» (անտիպ) գործերի:

ՊՈՂՈՍՅԱՆ Ալբերտ Կնյազի (1940–2014), մեքենագիտ–յան և նյութագիտ–յան բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1982), պրոֆ. (1983): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2000): Եղել է ՀՊՃՀ–ի ասպիրանտ. դպրոցի տնօրեն (2004–10): Մշակել է մեխանիզմների շփվող հանգույցների պատրաստման պոլիմեր. բաղադրյալ նյութեր: Հայկ. շփագիտ–յան կոմիտեի հիմնադիր–նախագահ (1974), Միջազգ. շփագիտ. խորհրդի փոխնախագահ (1997):

ՊՈՂՈՍՅԱՆ Ալեն Ժիրայրի (ծ. 1970), ֆուտբոլիստ: Ֆրանսիայի հավաքականի կազմում՝ աշխարհի (1998), Եվրոպայի (2000) չեմպիոն, իտալ. «Պարմայի» կազմում՝ Իտալիայի (1999), ՈՒԵՖԱ–ի (1999) գավաթների հաղթող:

ՊՈՂՈՍՅԱՆ Արամայիս Սարգսի (1914–1943), ավազ սերժանտ: ԽՄ հերոս (1943, հետմահու): Սաանակցել է *Մտպինգրադի ճակատամարտին*, Խարկովի ազատագրմանը, Դնեպրի գետանցմանը (որի համար արժանացել է հերոսի կոչման):

ՊՈՂՈՍՅԱՆ Արշակ Ստեփանի (ծ. 1949), կիսահաղորդչ. էլեկտրոնիկայի բնագավառի գիտնական: Ֆիզմաթ. գիտ. դ–ր, պրոֆ.: ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (2011): Ահխենի համալսարանի (Գերմանիա) Նանո– և կենսատեխնոլոգիաների ինստ–ի լաբորատորիայի վարիչ:

ՊՈՂՈՍՅԱՆ Արտաշես Ալեքսանդրի (1922–1997), բանաստեղծ, թարգմանիչ: Հեղինակ է «Փոթորկից հետո» (1955), «Պոեմներ» (1958), «Արյունոտ լուսաբաց» (1969), «Հիմն հողի և արևի» (1975), «Բանաստեղծություններ և պոեմներ» (1983), «Աստղափունջ» (2012) բանաստեղծությունների, պոեմների ժող–ների, «Հրաժեշտ անցյալին» (1978) վեպի:

ՊՈՂՈՍՅԱՆ Գալուստ Մ՝նացականի (1923–2008), քիմիկոս–օրգանիկ: Քիմ. գիտ. դ–ր (1973), պրոֆ. (1981): *Միմ*–եռազինային մոնոմերներից ստացել է բարձրջերմաստիճան. պոլիմերներ, որոնց մեխ. կայունությունը պահպանվում է մինչև 500°C տաքացնելիս: Ակրիլամիդի հիմքի վրա ստեղծել է մոնոմեր–պոլիմեր բաղադրամասերով համակարգեր, որոնցով ներծծված հողը դառնում է առավել անջրանցիկ:

ՊՈՂՈՍՅԱՆ Գեորգի Սամվելի (ծ. 1952), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (2002): 1999–2004–ին՝ ԵՊՀ հեռանկար. հետազոտությունների միջազգ. կենտրոնի տնօրեն, 2004–ից՝ ԳՀ վարչության պետ: Աշխ–ները վերաբերում են գերինտեգրվող համակարգերի տեսությանը և Լիի հանրահաշվի ու խմբերի կոնտրակցիային:

Միջուկ. հետազոտությունների միացյալ ինստ–ի 1–ին մրց. (2001):

ՊՈՂՈՍՅԱՆ Գեորգի Վադիմի (ծ. 1960), սուսերամարտիկ: ԽՍՀՄ ս. վ. (1980), ս. վ. (1992): Ուկրաինայի բազմակի չեմպիոն (1977–ից), աշխարհի երիտասարդ. առաջնության հաղթող (1980), օլիմպ. խաղերի (1992), աշխարհի 6–ակի (1983–88), Եվրոպայի և ԽՍՀՄ (1981, 1982) չեմպիոն:

ՊՈՂՈՍՅԱՆ Գևորգ Արամի (ծ. 1950), սոցիոլոգ: Սոցիոլոգ. գիտ. դ–ր (2003): ՀՀ ԳԱԱ ակադ. (2014, թղթ. անդամ՝ 2006–ից): 1996–ից՝ ՀՀ ԳԱԱ փիլ–յան, սոցիոլոգիայի և իրավունքի ինստ–ի տնօրեն: Աշխ–ները վերաբերում են սոցիոլոգ. մեթոդաբանության, միգրացիայի և հաս. կարծիքի հիմնախնդիրներին, անցումային շրջանի հաս–յունների սոցիոլոգիային: Միջազգ. սոցիոլոգ. ընկերակցության (1992), Բնության և հաս–յան մասին գիտությունների միջազգ. (1998), Միջազգ. փիլ. (2004) ակադ–ների անդամ:

ՀՀ «Մովսես Խորենացի» (2011), Ֆրիտյոֆ Նանսեն հիմնադրամի (2008) մեդալներ:

ՊՈՂՈՍՅԱՆ Դավիթ Միքայելի (1911–2004), երգիչ (բաս): ՀՀ ժող. արտիստ (1947): Պրոֆ. (1992): 1937–88–ին՝ ԵՕՔԹ մեներգիչ (Սիմոն բիձա՝ Հ. Ստեփանյանի «Լուսաբացին», Նաղիր շահ, Ռուբեն՝ Ա. Սպենդիարյանի «Ալմաստ», Հոր–հոր աղա՝ Տ. Չուխաճյանի «Լերլերիջի», Ամոնասրո՝ Ջ. Վերդիի «Աիդա», Գրեմին՝ Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», ևն): Համերգ. երկացանկում՝ Լ. վան Բեթհովենի 9–րդ սիմֆոնիայի, Վ. Ա. Մոցարտի Ռեքվիեմի բասի երգամասերը, նաև հայ, ռուս և արևմտաեվրոպացի կոմպոզիտորների երգեր և ռոմանսներ: Նկարահանվել է «Մայաթ–Նովա» հայկ. հեռուստաֆիլմում (1960):

ՊՈՂՈՍՅԱՆ Դորիկ Ասքանազի (1930–2009), աշխարհագետ: Աշխարհագր. գիտ. դ–ր (1999): Աշխ–ները վերաբերում են ՀՀ լանդշաֆտագիտ., բնական պաշարների գնահատման հարցերին: Համահեղինակ է գղտ. ատլասի (ռուս., 1984):

ՊՈՂՈՍՅԱՆ Եփրեմ (Փոնչոյան Սարգիս) Հակոբի (1897–1972), բանասեր: ՎննՄՄ անդամ (1917): Հեղինակ է «Քերականութիւն աշխարհաբար լեզուի» (մաս 1–2, 1935–36) դասագրքի, «Նոր տարուոյ տօնը հին և նոր հայոց քով» (1952), «Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու» (հ. 1–3, 1957–69), «Տատեան գերդաստանը» (1968) և այլ աշխ–ների, «Ապրումներ» (1968) բանաստեղծությունների ժող–ի:

ՊՈՂՈՍՅԱՆ Էդուարդ Սովսեսի (ծ. 1942), մաթ. կիբեռնետիկայի բնագավառի գիտնական: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1985), պրոֆ. (1986): Աշխ–ները վերաբերում են արհեստ. բանականության մաթ. հարցերին:

ՊՈՂՈՍՅԱՆ Թովմաս Գևորգի (ծ. 1954), երգիչ, բանահավաք, մանկավարժ: ՀՀ ժող. արտիստ (2011): Բանասիր. գիտ. դ–ր (2017): Պրոֆ. (2004): «Գանձասար» ժող. երգի–պարի (1987–92, նաև մեներգիչ), «Սայաթ–Նովա» աշուղ. երգի (1992) անսամբլների, համանուն մշակութ. միության (1995), Ջիվանու անվ. աշուղ. դպրոցի (1997) հիմնադիր–ղեկ.: Գրաբեղ է ժող. և աշուղ. երգեր, կազմել «Ջիվանի–150, անհայտ երգեր» (1996), «Աշուղ Ջիվանի, անհայտ երգեր» (2009) ժող–ները: ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2002):

ՊՈՂՈՍՅԱՆ Լաերտ Գրիգորի (ծ. 1931), կինոօպերատոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1983): Հրաչյա *Պողոսյանի* եղբայրը: 1957–ից՝ հայկ. հեռուստաստուդիայի օպերատոր («Մենք», 1969, Կարեն *Մեսյանի* հետ, «Հայաստանի բարձունքները», 1972, «Նվիրում», 1975, «Չարենց», 1977, ևն): Հեղինակային ֆիլմերից են՝ «Հակոբ Գյուրջյան» (1981), «Այս փոքրիկ մեծ աշխարհը» (1985), «Աշնանային շուկայի գույները» (1985): Հեղինակ է «Սովորիր կինո նկարահանել» (1966) գրքի: 2001–ից՝ ԱՄՆ–ում:

ՊՈՂՈՍՅԱՆ Խորեն Պետրոսի (1904–1989), օդերևութաբան: Աշխարհագր. գիտ. դ–ր (1946), պրոֆ. (1953): ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1981): Աշխ–ները վերաբերում են մթն–ի ընդհ. շրջանառության և խոնավաշրջանառության, ներքնոլորտում ու վերնոլորտում շարժընթացների սեզոն. փոփոխությունների հարցերին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1980):

ՊՈՂՈՍՅԱՆ Կարեն Սուրենի (1932–2016), այգեգործ–ֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ–ր (1973), պրոֆ. (1988): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996): Սուրեն *Պողոսյանի* որդին: Աշխ–ները վերաբերում են խաղողի վազի ֆիզիոլոգ. առանձնահատկություններին, ՀՀ խիստ ցամաք. կլիմա ունեցող մարզերում վազի բարձրարուն մշակության հարցերին: Միջազգ. խաղողագործ. ու գինեգործ. ակադ–ի անդամ (Իտալիա, 1998): ՀամԳԳԱ Կ. Ա. Տիմիրյազևի անվ. մեդալ (1981):

ՊՈՂՈՍՅԱՆ Հայկազ Մանուկի (1924–1996), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1972), պրոֆ. (1973): Աշխ–ները վերաբերում են հայ ազգ–ազատագր. շարժումների, Զեյթունի (1409–1921), Սասունի (1750–1918) և Վասպուրականի (1850–1900) պատմությանը:

ՊՈՂՈՍՅԱՆ Հարություն (Հատիկ) Գաբրեգինի (1916–1995), գեղանկարիչ: ՀԽՍՀ վաստ.նկարիչ (1966): Մանրադիտակ. փորագրությունների (բրնձի հատիկի վրա) առաջին հայ վարպետներից: Գործերից են «Նատյուրմորտ» երփնագիրը (1958), Վազգեն Ա կաթողիկոսի դիմանկարը (խճանկար, 1991, Սբ Էջմիածնի Վեհարան), դեկորատիվ խճանկար–պաննոն (1975, Սևան–Դիլիջան ճանապարհին, Ռուդոլֆ *Գարգալոյանի* հետ) ևն:

ՊՈՂՈՍՅԱՆ Հենրիկ Անդրեյի (1930–2000), պետ., քաղ. գործիչ: Արցախյան շարժման առաջնորդներից: 1986–88-ին՝ ԼՂԻՄ-ի գործկոմի նախագահի 1-ին տեղակալ, 1988-ի փետր-ին՝ կոմկուսի ԼՂԻՄ մարզկոմի 1-ին քարտուղար, ԽՍՀՄ ԳԽ նախագահության նիստում (18.07.1988) հիմնավորել է ԼՂԻՄ-ի Ադրբ. ԽՍՀ կազմում մնալու անհնարինությունը: ԼՂՀ «Սբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշան (2001):

ՊՈՂՈՍՅԱՆ Հմայակ Արտաշեսի (1910–1992), ճարտ.: ՀԽՍՀ վաստ. շինարար (1967): Պ-ի նախագծերով Երևանում կառուցվել են հաստոցաշինն. գործարանի վարչ. շենքը (1955), էլեկտրատեխ. գործարանի գլխ. մասնաշենքը (1956), հաստոցանորմալ (1967), Վանաձորում՝ քիմ. մանրաթելի (2-րդ հերթ՝ 1971), Վեդու (1952), Էջմիածնի (գլխ. մասնաշենքը, 1954) գինու և այլ գործարանների շենքեր:

ՊՈՂՈՍՅԱՆ Հովհաննես Գևորգի (1895–1948), կրթ., մշակույթի գործիչ, խմբ.: 1921-ից՝ Թիֆլիսի հայ գրողների միության նախագահ: Թիֆլիսում՝ «Պրոլետար» (1927–38-ին, 1990-ից՝ «*Վրաստան*»), 1934-ին Երևանում՝ «*Խորհրդային Հայաստան*» թերթերի խմբ.: 1936–37-ին՝ ՀԽՍՀ լուսժողկոմ, 1938-ից՝ արվ-ի գործերի վարչության պետ, Ռադիոկոմիտեի նախագահ, 1946–48-ին՝ ԵՊՀ ռեկտոր:

ՊՈՂՈՍՅԱՆ Հովսեփ (Իոսիֆ) Համբարձումի (1887–1938), կուս. և պետ. գործիչ: 1920-ին ընտրվել է *Արմավիրի* անդամ: 1921–23-ին՝ ՀԽՍՀ պարենժողկոմի տեղակալ, ապա՝ ժողկոմ, 1925–28-ին՝ պետպլանի նախագահ և ՆԽ նախագահի տեղակալ: 1928-ից՝ ԽՍՀՄ պետպլանի բաժնի վարիչ: Անհատի պաշտամունքի զոհ:

ՊՈՂՈՍՅԱՆ Հռիփսիմե Միսաքի (1899–1972), բանաստեղծուհի, թարգմանչուհի: ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1967): Հեղինակ է «Մայրական» (1936), «Խնդություն» (1948), «Անձրևից հետո» (1958), «Աստղային ճամփորդը» (1963), «Երեկո» (1966) բանաստեղծությունների ժող-ների, «Արձագանք» (1973) հուշագրության:

ՊՈՂՈՍՅԱՆ Հրանտ Ռուբենի (1938–2012), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (1985), պրոֆ. (1986): Աշխ-ները վերաբերում են արդ-յան մեջ աշխատավարձի ձևերի ու համակարգերի կատարելագործման, տարիֆ. համակարգի, աշխ-ի նորմավորման և այլ հարցերի:

ՊՈՂՈՍՅԱՆ Հրաչյա Գրիգորի (ծ. 1935), ճարտ.: ՀՀ վաստ. ճարտ. (1975): ՀՃԱ ակադ. (1994), Ճարտ-յան միջազգ. ակադ-ի թղթ. անդամ (1992): Լաերտ *Պողոսյանի* եղբայրը, Իզա *Չոլախյանի* ամուսինը: Համահեղինակ է Աբովյան (1961–70) և Սևան (1962–70) ք-ների գլխ. հատակագծերի, Երևանում՝ «Այրարատ» կինոթատրոնի (1970–74, ԽՍՀՄ ՆԽ մրց.՝ 1979), Երիտասարդ. պալատի (1970–85, ՀամԼԿԵՄ մրց.՝ 1981, ապամոնտաժվել է 2007-ին), Մարզահամերգ. համալիրի (1984, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1987), Դիլիջանում՝ կինեմատոգրաֆիստների ստեղծագործ. տան (1984, ՀՀ Պետ. մրց.՝ 1985), պանսիոնատի (1975) և հանգստյան տների համալիրի (1975), հեղինակ՝ ՀՀ Լոռու մարզի Ձորագետ գ-ի հյուրանոցի (2004) և այլ նախագծերի: Սոֆիայի «Բիենալե-85»-ի Մեծ մրց. և ոսկե մեդալ, 1984-ի և 1985-ի «Տարվա լավագույն կառույց» համամիութ. ստուգատեսների դափնեկիր ևն:

ՊՈՂՈՍՅԱՆ Մարտունի Գուրգենի (ծ. 1926), ճարտարագետ: Տեխ. գիտ. դ-ր (2003), պրոֆ. (1983): ՀՀ վաստ. ճարտարագետ (1971): Աշխ-ները վերաբերում են ջրատարների և ջրաբաշխման համակարգերի հաշվարկների մեթոդներին:

ՀՀ «Անանիա Շիրակացի» մեդալ (2002):

ՊՈՂՈՍՅԱՆ Միքայել Ասլանի (ծ. 1956), ավիահնստրուկտոր: Տեխ. գիտ. դ-ր (2002): ՀՀ ԳԱԱ պատվ. դ-ր (2002): ՌԴԱ ակադ. (2011): Եղել է «Սուխոյ» (1999–2007), «ՌԻԿ», «ՄիԳ» (2008–15) ընկ-ների գլխ. տնօրեն, «Միացյալ ավիաշինական կորպորացիայի» նախագահ (2011–15): Ղեկավարել է Սու–21 «Բիզնես դասի» գերձայն. ուղևորատար ինքնաթիռի և Սու–47 ռմբակոծիչի նախագծման աշխ-ները: ՀՏԱ անդամ (2001): ՌԴ Պետ. (1997), Կառ-յան (1998) մրց-ներ, «Պատվո նշան» շքանշան (2002):

ՊՈՂՈՍՅԱՆ Միքայել Մովսեսի (ծ. 1954), դերասան, ռեժ., պրոդյուսեր, երգիչ: ՀՀ ժող. արտիստ (2015): Հանդես է եկել «Խաթաբալադա» (1996), «Աննիվերսարիում» (2001, ռեժ.՝ Պ., ԱՄՆ), «Բարի գալուստ» (2006) ներկայացումներում: Նկարահանվել է կինոյում («Վերջին կիրակին», 1985, «Զայն բարբառոյ...», 1991, «Ուրախ ավտորուս», 2000, «Լռության սիմֆոնիա», 2001, «Երևան ջան», 2002, «Մաեստրո», 2009, «Կորած-մոլորվածը», 2012, «Եթե բոլորը...», 2012, պրոդյուսեր՝ Պ., «Երկրաշարժ», 2016, ևն):

«Լիստոպադ» միջազգ. կփ (2002, Մինսկ), Արքայազն Քլաուսի (2005, Նիդեռլանդներ), «Հայակ» (2012), ԹՄՄ (2011), «Ոսկե ծիրան» գլխ. (2012) մրց-ներ, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2009):

ՊՈՂՈՍՅԱՆ Յարոսլավ Մկրտչի (1930–2000), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1976), պրոֆ. (1981): Աշխ-ները վերաբերում են մագնիս. երևույթների ֆիզիկային, բարակ թաղանթների մագնիս. նուրբ կառուցվածքի ուսումնասիրությանը և էլեկտրոն. հաշվող. սարքերի տեղեկույթի սկզբունքորեն նոր կուտակիչների ստեղծմանը:

ՊՈՂՈՍՅԱՆ Յուրի Միքայելի (ծ. 1946), ստոմատոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (1998), պրոֆ. (1999): Աշխ-ները վերաբերում են մարգինների բարձունք. հարմարվողականության և դիմածնոտ. վնասվածքների, բորբոք. հիվանդությունների բուժման խնդիրներին: Մշակել է վիրահատ. նոր մեթոդներ, դիմածնոտ. շրջանի վնասվածքների և ձևախախտումների ժամանակ ներդրել ոսկրամատրիքս. փոխպատվաստանյութը: ՌԲՆԳԱ անդամ (2002):

ՊՈՂՈՍՅԱՆ Յուրի Վաղարշակի (1961–1992), ազատամարտիկ: Հայաստանի Ազգ. (1996), Արցախի (2002, երկուսն էլ՝ հետմահու) հերոս: Իր ղեկավարած զրահամեքենայով Խանաբադի և Ասկերանի մոտ մղված մարտերում ոչնչացրել է թշնամու զրահատեխնիկան: Զոհվել է Ասկերան-Նախիջևան ճակատային գծում:

ՀՀ Հայրենիքի (1996), ԼՂՀ «Ոսկե արծիվ» (2002), ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշաններ, «Շուշիի ազատագրման համար» և այլ մեդալներ:

ՊՈՂՈՍՅԱՆ Սերգեյ Շահենի (ծ. 1956), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր: Աշխ-ները վերաբերում են երակների վերակառուցող-վերականգնող. վիրահատությունից հետո անոթաապրյուն. հարաբերություններին հարցերին:

ՊՈՂՈՍՅԱՆ Սերոբ Պողոսի (1904–1983), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1956), պրոֆ. (1959): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1965): Աշխ-ները վերաբերում են Հայաստանում ավատատիրության ծագման հարցերին, սոցիալ-տնտ. հարաբերություններին, պատմագրությանը:

ՊՈՂՈՍՅԱՆ Սերվետ Ստեփանի (ծ. 1948), ճարտ., նկարիչ: Համահեղինակ է Դիլիջանում՝ պանսիոնատի, պրոֆիլակտորիումի, հանրակացարանի (երեքն էլ՝ 1975), Երևանում՝ Նորքի «Ծիծեռնակ» միջազգ. երիտասարդ. ճամբարի (1975), երաժշտ. դպրոցի (1983), Ստեփանավանում՝ Ս. Շահումյանի հուշահամալիրի (1978), Մարտունիում՝ գրադարանի (1988) նախագծերի: ՀԼԿԵՄ մրց. (1983):

ՊՈՂՈՍՅԱՆ Ստեփան Կարապետի (1932–2012), պատմաբան, պետ. գործիչ, խմբ.: 1970–88-ին՝ Հեռուստառադիոպետկոմի նախագահ, 1988–90-ին՝ *Արմավիրի* տնօրեն, 1991–92-ին՝ «Երկիր ավետյաց» թերթի խմբ.: Հեղինակ է «Պատմության կեղծարարները» (1986, անգլ. և հայ.), «Ինքնապաշտպանական կռիվները» (1990), «Ա. Անտոնյանի «Մեծ ոճիրը» մեղադրում է» (1990), «Քրդերը և Հայկական հարցը» (1991), «Արևմտահայությունը ցեղասպանության շեմին» (1997), «Սասունցիներ» (2000), «Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն» (համահեղ., հ. 1–3, 2000–03), «Հայոց ցեղասպանության պատմություն» (2008), «Հարևաններ մոտ ու հեռու: Պատմագիտական ուսումնասիրություններ» (գիրք 1–3, 2011) և այլ աշխ-ների, «Ինձ բահ տվեք...» (համահեղ., 1990) վավերագր. վեպի:

ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալ (2011):

ՊՈՂՈՍՅԱՆ Սուրեն Համբարձումի (1908–1988), կենսաբան: Գղտ. գիտ. դ-ր (1954), պրոֆ. (1962): ՀամԳԳԱ թղթ. անդամ (1956): ՀՀ-ում խաղողի գիտ. ընտրասերման հիմնադիրը: ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): Կարեն *Պողոսյանի* հայրը: Աշխ-ները վերաբերում են խաղողի վազի գենետիկայի, ընտրասերման և սորտ. ուսումնասիրության հարցերին: Ստեղծել է (աշխատակիցների հետ) գինու և սեղանի խաղողի բազմաթիվ սորտեր: Նրա ղեկավարությամբ հրատարակվել է «ՀԽՍՀ ամպելոգրաֆա» (հ. 2–3, 1962–81) աշխ-ը: Իտալիայի խաղողի և գինու ակադ-ի պատվ. թղթ. անդամ (1968):

ՀամԳԳԱ Ի. Մ. Միչուրինի անվ. ոսկե (1986), ԽՍՀՄ ԺՏՆՑ ոսկե (5), արծաթե (5) մեդալներ:

ՊՈՂՈՍՅԱՆ Վազգեն Վոլոդյայի (ծ. 1951), շինարար: Տեխ. գիտ. թեկնածու (2002), դոցենտ (2003): Ղեկավարել է Սբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու կառուցման, ԵՕԲԹ-ի, Հայֆիլհարմոնիայի մեծ համերգասրահի վերակառուցման աշխ-ները, զբաղվել տեղական հումքով կոնստրուկտիվ ջերմամեկուսիչ բետոնների մշակմամբ: ՀՏԱ անդամ (2004), Հայաստանի շինարարների միության նախագահ (1993–2005):

ՀՀ Պետ. մրց. (2001), ՀԱԵ (2001), ՀՀ «Անանիա Շիրակացի» (2004), ԵՃՇՊՀ ոսկե (2002) մեդալներ:

ՊՈՂՈՍՅԱՆ Վալերի Վաղարշակի (ծ. 1944), ֆիզիկոս, փիլ.: ՀՀ ՆԳ գեն-մայոր (1992): Փիլ. գիտ. թեկնածու (1974): 1967–1990-ին աշխատել է Հայկ. հանրագիտա-

րանի գլխ. խմբագրությունում, 1991–92-ին՝ ՀՀ ՆԳ նախարար, 1992–93-ին՝ ԱԱ պետ. վարչության պետ, 1996–2014-ին՝ ՀՀ Սահմանադր. դատարանի անդամ: Աշխ-ները վերաբերում են սահմանադր. իրավունքի հարցերին, կազմել է «Սահմանադրական հասկացությունների համառոտ բառարան» (2001), «Ժողովրդավարություն և իրավունք» (2003) և «Քաղաքագիտություն» (համահեղ., 2004) հանրագիտ. բառարանները:

ՊՈՂՈՍՅԱՆ Վահե (Վոլոդյա) Ալեքսանի (ծ. 1944), գրող: Հեղինակ է «Կանգառում և սլացքի մեջ» (1972), «Ասպետի կացարանը» (1977), «Երկնային պատիժ» (1983), «Ճերմակ գառների ամառը» (1985), «Տաք ձյունը» (1985), «Երկու վիպակ», «Դատը» (երկուսն էլ՝ 2001) վիպակների ու պատմվածքների ժող-ների, «Հեքիաթների զարդատուփ» (1992) հեքիաթի:

ՊՈՂՈՍՅԱՆ Վլադիմիր Հովսեփի (ծ. 1940), նյարդաձևաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1993): Աշխ-ները վերաբերում են գլխուղեղի կառուցվածք. և առաձգականության հարցերին:

ՊՈՂՈՍՅԱՆ Տաճատ (1905–1981), մանկավարժ, խմբ., հրտ.: 1949–55 և 1973–74-ին՝ *«Ալիք»* օրաթերթի գլխ. խմբ., 1937–39-ին՝ «Նաւասարդ», 1943–46-ին՝ «Լոյս» գր. և գիտ. հանդեսների (Հովսեփ *Թադևոսյանի* հետ) հրտ-խմբ.: 1968–81-ին՝ Թեհրանի «Մոդեռն» տպարանի սեփականատեր:

ՊՈՂՈՍՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ, հայկ. ամենօրյա կրթ. հաստատություն: Հիմնադրվել է 1840-ական թթ-ին Ալեքսանդրիայում. մինչև 1867-ը՝ Արամյան, մինչև 1890-ը՝ Պողոսպեյան (մեծահարուստ Պողոս պեյ Յուսուֆյանի անունով): Սկզբում՝ արական, 1866-ից՝ երկսեռ: Մինչև 1927-ը՝ 7-ամյա, ապա՝ 5-ամյա ծրագրով: Ուսուցումը՝ անվճար:

ՊՈՂՈՍՈՎ Ալբերտ Վազգենի (ծ. 1953), հոգեբույժ, թմրաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1992), պրոֆ. (1994): Աշխ-ները վերաբերում են ալկոհոլամոլության, ափիոնային և ինհալացիոն թունամոլության կլինիկային, ախտածագմանը, թմրաբան. ծառայության կազմակերպմանը, տագնապ. և հոգեվնասվածք. գերհույզ. խանգարումների, ռիսկի գործոնի կլինիկայի և բուժման խնդիրներին: ՌԲՆԳԱ թղթ. անդամ (1998):

ՊՈՂՈՍՈՎ Արտեմ Կարապետի (1907–1989), խորհրդ. բանակի գեն-մայոր (1953): 1939-ին մասնակցել է ճապոնացիների ջախջախմանը Խալխին Գոլ գետի շրջանում: ՀՄՊ-ի ժամանակ՝ տանկ. դիվիզիայի բրիգադի կոմիսար, տանկ. կորպուսի քաղբաժնի պետ: Պատերազմից հետո՝ ռազմ. ակադ-ի քաղբաժնի պետ: Զորացրվել է 1961-ին: Լ.Ենինի (2), Կարմիր դրոշի և այլ շքանշաններ:

ՊՈՂՈՍՈՎ Վանիկ Սահակի (ծ. 1928), վիրաբույժ, քիթկոկորդականջաբան: Բժշկ. գիտ. դ-ր, պրոֆ.: ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ: Աշխ-ները վերաբերում են քիթկոկորդականջի չարորակ հիվանդությունների խնայող. բուժման եղանակներին:

ԽՍՀՄ Կարմիր դրոշի շքանշան:

ՊՈՂՈՍՈՎԱ Ռիտա Լևոնի (ծ. 1948), սեղանի թենիսիստուհի: ԽՍՀՄ (1964), միջազգ. կարգի (1969) ս. վ.: Աշխարհի (1969), Եվրոպայի (1970), ԽՍՀՄ 10-ակի (1967–76) չեմպիոն:

ՊՈՂՊԱՏ, երկաթի (Fe) համաձուլվածքն ածխածնի (մինչև 2 %) և այլ տարրերի հետ: Ստանում են հիմնականում թուջի և պողպատի մետաղաջարդոնի խառնուրդից՝ թթվածնային կոնվերտորներում, մարտենյան և էլեկտրավառարաններում: Ըստ քիմ. բաղադրության՝ տարբերում են ածխածնային և լեգիրված, ըստ նշանակության՝ կառուցվածք. և գործիք., ինչպես նաև հատուկ ֆիզ. և քիմ. հատկություններով (չժանգոտվող, կրակակայուն, էլեկտրատեխ. ևն) Պ-ներ:

ՊՈՂՊԱՏԲԵՏՈՆ, մաշակայուն բետոն, որը պատրաստվում է պորտլանդցեմենտից, ջրից, կվարց. ավազից և պողպատի տաշեղներից ու խարտուքից: Օգտագործվում է անկար ծածկերի վերին շերտերում կամ պահեստ. ու արտադր. շենքերի հավաքովի հատակներում:

ՊՈՂՊԱՏԵ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, սովորաբար շին. կրող կառուցվածքներ են (շինությունների կմախք, կամրջաթռիչքներ, հեռուստաաշտարակներ ևն), առանձին կառուցված տարրերն իրար միացվում են եռակցումով, գամերով կամ հեղույսներով:

ՊՈՄԵՐԱՆՉԻԿ Իսահակ Յակովլևիչ (1913–1966), ռուս. ֆիզիկոս, տեսաբան: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1964): Աշխ-ները վերաբերում են ցածր ջերմաստիճանների ֆիզիկային: Մեծ ներդրում ունի խորհրդ. առաջին միջուկ. ռեակտորների ստեղծման, ինչպես նաև բարձր էներգիաների ֆիզիկայի զարգացման գործում: Զևակերպել է (1958) դաշտի քվանտ. տեսության կարևոր դրույթներից մեկը (Պ-ի թեորեմ): ԽՍՀՄ Պետ. մրց. (1950, 1952):

ՊՈՄՊ, 1. նյութերի (հիմնականում՝ հեղուկների)՝ ճնշմամբ տեղափոխման (արտածծման, մղման) սարք. աշխ-ը հիմնված է նյութին էներգիա (կինետիկ կամ պոտենցիալ) հաղորդելու վրա: Տարբերում են դինամիկ. և ծավալ. Պ-եր: Երբեմն Պ. են անվանում նաև գազերի սեղմման կամ նոսրացման սարքերը (օր.՝ վակուումային Պ.) և գազի հոսքով նյութերի (ցեմենտ ևն) տեղափոխման սարքերը: 2. Փոքր համաստեղություն (լատ.՝ Antlia) Հվ. կիսագնդում՝ Հիդրա, Կենտավրոս, Առագաստ, Կողմնացույց համաստեղությունների միջև: Ամենապայծառ աստղը 43 *ա. մ.* է:

ՊՈՄՊԵՅ (Pompei), հնավայր, հինհռոմ. ք. Հվ. Իտալիայում: Ավերակները՝ Նեապոլի ծոցի ափին՝ *Վեզուվ* լ-ան ստորոտին՝ Նեապոլ ք-ից 22 *կմ* հվ-արլ.՝ այժմյան Պոմպեյ ք-ի մոտ: Կործանվել է 79-ի օգոստ-ին՝ Վեզուվի ժայթքման ժամանակ: Կանոնավոր պեղումներն սկսվել են 1808–15-ին:

ՊՈՄՊԵՈՍ Գնեոս Մեծ (Pompeius Gnaeus Magnus, մ. թ. ա. 106–48), հռոմեացի զորավար և քաղ. գործիչ: Սեքստոս *Պոմպեոսի* հայրը: Մ. թ. ա. 66-ին նշանակվել է արլ. զորքերի գլխ. հրամ., պարտության մատնել Պոնտոսի թագավոր *Միհրդատ VI Եվպատորին*, այնուհետև առնչվել է *Տիգրան Բ Մեծի* հետ (տես *Արտաշատի պայմանագիր*): 60-ին Հուլիոս *Կեսարի* և Մարկոս Կրասոսի հետ ստեղծել է 1-ին *եռապետությունը*: Մ. թ. ա. 49–45-ի քաղաքաց. պատերազմում պարտվել է Հուլիոս Կեսարին, փախել Եգիպտոս, որտեղ էլ նրան սպանել են:

ՊՈՄՊԵՈՍ Սեքստոս (Pompeius Sextus, մ. թ. ա. մոտ 75–35), հռոմեացի զորավար և քաղ. գործիչ: Գնեոս *Պոմպեոսի* 2-րդ որդին: Հոր մահից հետո Աֆրիկայում (48–46) և Իսպանիայում (46–44) պատերազմել է Հուլիոս *Կեսարի*, ապա՝ 2-րդ *եռապետության* դեմ: 36-ին պարտվել է Օկտավիանոսին, փախել Փոքր Ասիա, որտեղ սպանվել է:

ՊՈՄՊԻԴՈՒ (Pompidou) Ժորժ (1911–1974), Ֆրանսիայի նախագահ՝ 1969-ից: 1962–1968-ին՝ վարչապետ:

ՊՈՄՊՈՆԱՅԻ (Pomponazzi) Պետրո (1462–1525), իտալացի փիլ.: Վերածննդի դարաշրջանի արիստոտելականության ներկայացուցիչներից: Երկակի ճշմարտության մասին ուսմունքի դիրքերից մերժել է հոգու անմահության բանական ապացուցման հնարավորությունը: Հեղինակ է «Հոգու անմահության մասին» ստեղծագործության:

ՊՈՅԱՃՅԱՆ Զապել (Բոյաջյան Զաբել) Թովմասի (1872–1957), գրող, թարգմանչուհի, նկարիչ-ձևավորող: Հեղինակ է «Եսթեր» (1901) վեպի, «Գրչով և ներկապնակով Հունաստանում» (1938) ճամփորդ. նոթերի, «Էջմիածին» (1943, բոլորը՝ անգլ.) դրամայի: Կազմել, պատկերազարդել և հրատարակել է «Հայկական լեգենդներ և պոեմներ» (1916) ժող-ը, մշակել «Գիլգամեշ» (1924) էպոսը: Անգլ. է թարգմանել հայ գրողների երկերից (Ա. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի», 1948, ևն):

ՊՈՅԱՋՅԱՆ Համբարձում Հակոբի, **Մեծն Մուրադ** (1867–1915), ազգ-ազատագր. շարժման գործիչ: Հնչակյան կուս-յան ղեկ-ներից: Մարտիրոս *Պոյաջյանի* եղբայրը: Գում Գափուի ցույցի (1890) գլխ. կազմակերպիչներից: Ղեկավարել է 1894-ի Սասունի ապստամբությունը: Երիտթուրքերի հեղաշրջումից (1908) հետո ընտրվել է ազգ. երեսփոխան և Օսմ. խորհրդարանի անդամ: 1915-ին ձերբակալվել է, աքսորվել Կեսարիա և կախադան բարձրացվել:

ՊՈՅԱՋՅԱՆ Մարտիրոս Հակոբի, *Ժիրայր* (1856–1894), ազգ-ազատագր. շարժման գործիչ: Համբարձում *Պոյաջյանի* եղբայրը: 1892-ին պատրաստել է թուրքիկներ Աբդուլ Համիդ II-ի վարչակարգը տապալելու կոչերով, որը հայերի նոր հալածանքների առիթ է դարձել: Անմեղ մարդկանց փրկելու համար Պ. հանձնվել է իշխանություններին: Կախաղան է բարձրացվել:

ՊՈՅԿԻԼՕՍՄՈՏԻԿ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ (< հուն. poikilos – տարբեր և osmos – ճնշում), ջր., գլխավորապես՝ ծով. կենդանիներ (սպունգներ, աղեխորշավորներ, մի շարք որդեր, փափկամարմիններ, փշամորթներ), որոնք շրջակա միջավայրի օսմոտիկ ճնշման փոփոխությունների դեպքում խոռոչ. և հյուսվածք. հեղուկներում ունակ չեն պահպանելու շատ թե քիչ կայուն օսմոտիկ ճնշում:

ՊՈՅՆՏԵՐ (անգլ.՝ pointer), որսական շների ցեղ: Բուծվել է Անգլիայում XIX դ-ի վերջին: Նրբագեղ է, կարճամազ, ամուր և չոր մարմնակազմվածքով: Օգտագործում են փետրավոր թռչուններ որսալու համար:

ՊՈՅՆՏԻՆԳ (Poynting) Ջոն Հենրի (1852–1914), անգլիացի ֆիզիկոս: Ներմուծել է (1884) «Էլեկտրամագնիսական էներգիայի հոսք» հասկացությունը (Պ-ի վեկտոր): Հայտնաբերել է (1903) *Պոյնտինգ–Ռոբերտսոնի էֆեկտը*:

ՊՈՅՆՏԻՆԳԻ ՎԵԿՏՈՐ, էլեկտրամագնիս. դաշտի էներգիայի հոսքի խտ-յան վեկտոր, **S** = [**EH**] (ՄՄՀ-ում), **S** = (*c*/4π) [**EH**] (ՍԳՎ համակարգում), որտեղ **E**-ն և **H**-ը համապատասխանաբար էլ. և մագնիս. դաշտերի լարվածություններն են, *c*-ն՝ լույսի արագությունը վակուումում: Պ. վ-ի մոդուլը հավասար է էներգիայի այն

քանակին, որը փոխանցվում է S–ին ուղղահայաց միավոր մակերեսով՝ միավոր ժամանակում: Հասկացությունը ներմուծել է Ջ. *Պոյնտինգը*՝ Ն. Ա. Ումովի՝ ընդհ. ձևակերպումից (1874) 10 տարի հետո, որի համար այն կոչվում է նաև Ումով–Պոյնտինգի վեկտոր:

ՊՈՅՆՏԻՆԳ–ՌՈԲԵՐՏՍՈՆԻ ԷՖԵԿՏ, փոքր մարմնի շարժման քանակի մոմենտի աստիճան. նվազումը՝ շարժման ընթացքում աստղի ձգողության դաշտում նրա արգելակման հետևանքով: Պ–Ռ. է–ի արդյունքում մարմինը պարուրագծով շարժվում է դեպի աստղը: Բացահայտել է Ջ. *Պոյնտինգը* 1903–ին, ռելյատիվիստ. տեսությունը մշակել է Գ. Ռոբերտսոնը 1937–ին:

ՊՈՆԳԻԴՆԵՐ (Pongidae), խոշոր մարդանման կապիկներ, պրիմատների կարգի նեղքիթ կապիկների ընտանիք: Հայտնի է 3 սեռ՝ *օրանգուտան*, *շիմպանզե*, *գորիլա*:

ՊՈՆԻՆԵՐ (անգլ.՝ pony), փոքր (բարձր.՝ 80–140 *սմ*) ձիեր, բուծվել են Հս. Եվրոպայի կղզիներում (կղզային ձիեր): Հայտնի են շուրջ 20 հեծկան և թեթև լծկան ցեղի (շետլանդյան, ուելսյան, իսլանդ., հոկայդո–Պ.) Պ.:

ՊՈՆԿԻԵԼԼԻ (Ponchielli) Ամիլկարե (1834–1886), իտալացի կոմպոզիտոր: Հեղինակ է «Ջոկոնդա» (1876) օպերայի, բալետների, «Գարիբալդիի հիշատակին» օրհներգի (1882) և այլ գործերի:

ՊՈՆՅԱՏՈՎՍԿԻ (Poniatowski) Յուզեֆ (1763–1813), իշխան, լեհ գեն., Ֆրանսիայի մարշալ (1813): 1806–07–ի ռուս–պրուս–ֆրանս. պատերազմում անցել է Նապոլեոն I–ի կողմը: 1807–ին՝ Վարշավայի դքսության ռազմ. նախարար, 1812–13–ին՝ նապոլեոնյան բանակի կորպուսի հրամ.: Զոհվել է Լայպցիգի ճակատամարտում:

ՊՈՆՅԱՏՈՎՍԿԻ Ստանիսլավ Ավգուստ (1732–1798), Լեհաստանի վերջին թագավորը՝ 1764–95–ին: Ունեցել է ռուս. կողմնորոշում:

ՊՈՆԱՄԱՐԵՆԿՈ Վասիլի Անդրեևիչ (1926–1990), բարձրմոլ. միացությունների բնագավառի ռուս. գիտնական: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1987): Հայտնագործել է գերճկուն մակրոմոլ–ների և պոլիմերման կինետիկ. իզոտոպ. էֆեկտը: Մշակել է պոլիֆունորօրգանասիլօքսանների և պոլիվինիլպիրոլիդոնի ստացման եղանակներ:

ՊՈՆԱՄԱՐՅՈՎ Ալեքսանդր Սերգեևիչ (ծ. 1956), լրագրող: 1993–ից՝ «Օստանկինոյի» գլխ. տնօրեն, 1997–ից՝ Մոսկվայի անկախ տեղեկատվ. միավորման նախագահ, 2001–05–ին՝ Համառուսաստան. հեռուստառադիոընկ–յան փոխնախագահ և «Կուլտուրա» պետ. հեռուստառադիոընկ–յան գլխ. տնօրեն: 2006–ից՝ «ՏՎ–Ցենտր» հեռուստաընկ–յան գլխ. տնօրեն:

ՊՈՆԱՄԱՐՅՈՎ Բորիս Նիկոլաևիչ (1905–1995), խորհրդ. կուս. գործիչ, պատմաբան: ՌԳԱ ակադ. (1962): Սոց. աշխ. հերոս (1975): 1961–86–ին՝ ԽՄԿԿ ԿԿ քարտուղար: Աշխ–ները վերաբերում են միջազգ. կոմ. և բանվ. շարժումներին: Լենինյան մրց. (1982):

ՊՈՆԱՄԱՐՅՈՎ Նիկոլայ Աֆանասևիչ (1918–1997), ռուս. գրաֆիկ: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1977): ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի անդամ (1973, նախագահ՝ 1991–ից): Հեղինակ է գծանկարների շարքի («Հյուսիսային Վիետնամ», 1957), բնանկարների («Մերձմոսկովյան առագաստներ», 1969), դիմանկարների («Վիրաբույժ Վ. Սավելև», տեմպերա, 1977): ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ՊՈՆԱՄԱՐՅՈՎԱ Նինա Ապոլոնովնա (1929–2016), ռուս. մարզուհի (աթլետիկա): ԽՍՀՄ ս. վ. վ. (1952): Օլիմպ. խաղերի (1952՝ ԽՍՀՄ–ում 1–ինը, 1960), Եվրոպայի (1954) և ԽՍՀՄ (1951–56, 1958–59) չեմպիոնուհի (սկավառակի նետում):

ՊՈՆԱՄԱՐՅՈՎ–ՍՏԵՊԱՆՈՅ Նիկոլայ Նիկոլաևիչ (ծ. 1928), ռուս. միջուկ. ֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (1987): Աշխ–ները վերաբերում են գազ. ջերմակիրներով բարձրջերմաստիճան. միջուկ. ռեակտորների ուսումնասիրությանը: ԽՍՀՄ Պետ. (1980), Լենինյան (1985) մրց–ներ:

ՊՈՆՆ (Pons) Լիլի (1898–1976), ֆրանսիացի երգչուհի (քնարակոլորատուր. սոպրանո): 1931–55–ին՝ Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերայի» մենակատարուհի (Զիլդա, Վիոլետա՝ Ջ. Վերդիի «Ռիգոլետտո», «Տրավիատա», Ռոզինա՝ Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», Լակմե՝ Լ. Դելիբի «Լակմե», ևն): Հանդես է եկել նաև Լոնդոնի «Քովենտ Գարդեն», Բուենոս Այրեսի «Կոլոն» և այլ թատրոններում:

ՊՈՆՍԵ (Ponce), ք. Պուերտո Ռիկոյում, նվինգստ Կարիբյան ծովափին: Բն.՝ 144,5 հզ. (2010): Ունի օդանավակայան, արվ–ի թանգարան:

ՊՈՆՍԵ ԴԵ ԼԵՈՆ (Ponce de León) Խուան (մոտ 1460–1521), իսպանացի կոնկիստադոր: 1508–ին հայտնագործել է Պուերտո Ռիկո կղզու ծովախորշը, որտեղ հիմնադրել է Սան Խուան ք., 1513–ին հայտնագործել է Ֆլորիդայի ափերը: Հնդկացիների դեմ պատերազմում վարել է բնաջնջման քաղ–յուն:

ՊՈՆՍԵԼԵ (Ponselet) Ժան Վիկտոր (1788–1867), ֆրանսիացի մաթեմատիկոս և ճարտարագետ: Ս.Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1857): Աշակել է պրոյեկտիվ երկրչափ–յան հիմունքները:

ՊՈՆՍՈՆ ԴՅՈՒ ԹԵՌԱՅ (Ponson du Terrail) Պիեռ Ալեքսիս, վիկոնտ դը (1829–1871), ֆրանսիացի գրող: Վեպ–ֆելիետոնի հիմնադիրներից: Հեղինակ է «Ռոկամբոլի արկածները» (հ. 1–22, 1857–80) վիպաշարի:

ՊՈՆՏԱԿԱՆ ԼԵՈՆՆԵՐ, Թուրքիայում՝ Սև ծովի ափերի երկայնքով: Երկ.՝ մոտ 1000 *կմ*, բարձր.՝ 3932 *մ* (Քաջքար լ.): Բաժանված է Արլ., Արմ. և Զանիկ լ–ների: Ծածկված է լայնատերև ասեղնատերև անտառներով, հվ–ում՝ թփուտներով, տափաստաններով և կիսաանապատով:

ՊՈՆՏԱՆՈ (Pontano) Զովաննի (1426/29–1503), իտալացի բանաստեղծ, փիլ–հումանիստ: Հեղինակ է «Ուրանիա» (1476), «Ասուպներ» (1490) ուսուցող. պոեմների, նաև երգիծ. երկերգությունների, տրակտատների, քնար. բանաստեղծությունների:

ՊՈՆՏԵԿՈՐՎՈ Բրունո Մաքսիմովիչ (1913–1993), իտալացի ֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (1964): Աշխ–ները վերաբերում են նեյտրոնների դանդաղեցմանն ու նրանց զավթմանն ատոմների միջուկներում, միջուկ. ռեակտորներին, միջուկ. իզոմերիային, թույլ փոխազդեցություններին, նեյտրոն. և աստղ. ֆիզիկային: ԽՍՀՄ Պետ. (1954), Լենինյան (1963) մրց–ներ:

ՊՈՆՏԻ (Ponti) Զո (Զովաննի, 1891–1979), իտալացի դիզայներ, ճարտ.: Աշխ–ներն աչքի են ընկնում լակոնիզմով («Պիրելլի» երկնաքերը Միլանում, 1956–58, ևն): Պաշտպանել է «գերարվեստի» գաղափարը:

ՊՈՆՏԻԱՆԱԿ (Pontianak), ք. Ինդոնեզիայում, Արմ. Կալիմանտան պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 554,7 հզ. (2010):

ՊՈՆՏԻՖԻԿԱՏՈՒՄ (լատ.՝ pontificatus), Հռոմի պապի իշխանության և կառավարման շրջանը: Պապի տիտղոսներից է պոնտիֆեքսը (pontifex – քահանայապետ):

ՊՈՆՏԻՖԻԿՆԵՐ (լատ.՝ pontifex, < pont – «կամուրջ» և facere – բացել, անել), Հին Հռոմի քրմ. կարևորագույն միավորումներից մեկի անդամները, որոնք կառավարել են համապետ. կրոն. արարողությունները, կազմել օրացույցներ, հյուպատոսների ցուցակները ևն: Պ–ի թիվը տատանվել է 3–ից մինչև 15–ը, գլխավորը գերագույն պոնտիֆիկն է (pontifex maximus):

ՊՈՆՏՈՊԻԴԱՆ (Pontoppidan) Հենրիկ (1857–1943), դանիացի գրող: Հեղինակ է «Ավետյաց երկիր» (1891–95) սոցիալ–քննադատ., հոգեբ. եռերգության, «Երջանիկ Պերը» (1898–1904), «Մեռյալների թագավորություն» (1912–16) փիլ. վեպերի, նաև պատմվածքների, «Ինքն իրեն տանող ճանապարհին» (1943) հուշագրության: Նոբելյան մրց. (1917):

ՊՈՆՏՈՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, **Պոնտոս**, պետություն Փոքր Ասիայում մ. թ. ա. 302/301–64–ին և մ. թ. ա. 40–ս. թ. 64–ին: Հիմնադրվել է *Կապադովկիայի* մերձսևծով. շրջաններում՝ պարսիկ Միհրդատի գլխավորությամբ: Մայրաքաղաքները՝ Ամասիա, Սինոպե: Հզորության գագաթնակետին է հասել *Միհրդատ VI* **Եվպատորի** (մ. թ. ա. 111–63) օրոք: Վերջինս նվաճել է *Բոսպորի թագավորությունը*, Կողքիսը, կտակով ստացել Փոքր Հայքի թագավորության կառավարումը: Դաշինք է կնքել *Տիգրան Բ Մեծի* հետ (տես *Հայ–պոնտական դաշինք մ. թ. ա. 94*): Երկարատև պատերազմներ է մղել Հռոմի դեմ (տես *Միհրդատյան պատերազմներ*):

ՊՈՆՏՈՐՄՈ (Pontormo, Կարրուչչի) Յակոպո (1494–1556/57), իտալացի գեղանկարիչ: Մաներիզմի հիմնադիրներից: Կրոն. թեմայով կոմպոզիցիաներում («Հազաղ դնելը») նկատելի են գուներանգի լարվածությունը և հագեցվածությունը, դիմանկարներում՝ ներքին անհանգստությունը: Գծանկարները («Երեք գեղուհիներ», մոտ 1535–36) առանձնանում են վիրտուոզ վարպետությամբ:

ՊՈՆՏՐՅԱԳԻՆ Լև Սեմյոնովիչ (1908–1988), ռուս. մաթեմատիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1958): Սոց. աշխ. հերոս (1969): Աշխ–ները վերաբերում են տեղագրությանը, անընդհատ խմբերի տեսությանը, դիֆերենցիալ հավասարումներին: Լավարկային շարժընթացների մաթ. տեսության ռուս. գիտ. դպրոցի հիմնադիրն է: ԽՍՀՄ Պետ. (1941, 1975), Լենինյան (1962) մրց–ներ:

ՊՈՆՖԻՈՒՍ, **Ֆրա Բոնիֆացիուս** (Bonifacius), **Ապոնց**, XIV դ–ի 1–ին կեսի աստվածաբան և թարգմանիչ, Ֆրանցիսկյան միաբանության անդամ: Գործել է *Ծործորի վանքում*: Լատ–ից հայ. է թարգմանել փիլ. գրկ–յան մի շարք գործեր, ինչպես նաև կաթոլիկ. եկեղեցու Պատարագամատույցը: Ձեռագրերից պահվում են Մոնդ–ում:

ՊՈՈՊՈ (Poopo), անհոս աղի լիճ Կենտր. Անդերում՝ Բոլիվիայում՝ 3690 *մ* բարձրյան վրա: Մակերեսը՝ շուրջ 3 հզ. *կմ²*, խոր.՝ մինչև 3 *մ*: Տիտիկակա լճից Պ. է ներհոսում Դեսագուադերո գետը:

ՊՈՉԱՎՈՐ ԵՐԿԿԵՆՅԱՂՆԵՐ (Caudata), երկկենցաղների կարգ: Երկ.՝ մինչև 160 *սմ* (իսպոլինյան սալամանդր): Վերջույթները 2 զույգ են, մի մասինը (ծովակովեր)՝

1 զույգ (առջևինը)։ Հայտնի է մոտ 360 տեսակ՝ հիմնականում՝ Հս. կիսագնդի բարեխառն գոտում։ Ապրում են քաղցրահամ ջրամբարներում կամ խոնավ վայրերում։ Մսվում են մանր անողնաշարներով։ Ունակ են վերականգնելու կորցրած պոչը և վերջույթները։ 19 տեսակ գրանցված է ՐՊՄՄ Կարմիր գրքում։ ՀՀ-ում հայտնի է Պ. ե-ի 2 տեսակ՝ ***փոքրասիական*** և ***սովրասկան փրիփոններ***։

«ՊՈՉՏԱ ԴՈՒԽՈՎ» («Почта духов» – «Հոգիների փոստարկղ»), ռուս. երգիծ. ամսագիր (1789, Ս. Պետերբուրգ)։ Խմբ-հրտ.՝ Ի. Ա. ***Կռիլով***։

ՊՈՉՈՒԿ, մարդու ողնաշարի ծայրային (ստորին) մասը։ Կազմված է թերաճ ու հետաճած 4–5 ողներից։ Համանման է մյուս ողնաշարավորների պոչային կմախքին։ Մասնակցում է կոնքի ձևավորմանը։

ՊՈՉՈՒԿԱՅԻՆ ԳԵՂՁ, թռչունների մեծ մասի խոշոր մաշկ. գեղձ։ Տեղակայված է պոչի հիմքի մեջքային կողմում։ Պ. գ-ի ճարպարտադր-յունը կտուցով տարածում է փետուրների վրա։ Դրանք պահպանում են փետուրների կանոնավոր դասավորությունը և պաշտպանում թրջվելուց։

ՊՈՊԱՅԱՆ (Popayán), ք. Կոլումբիայում՝ ***Պանամերիկյան ճանուղու*** վրա, Կաուկա դեպարտամենտի վարչ. կենտրոնը։ Բն.՝ 238 հզ. (2010)։

ՊՈՊԵՆՉԵՆԿՈ Վալերի Վլադիմիրովիչ (1937–1975), ռուս բոնցքամարտիկ։ ԽՍՀՄ ս. վ. վ. (1964)։ Տեխ. գիտ. թեկնածու։ Օլիմպ. խաղերի (1964), Եվրոպայի (1963, 1965) և ԽՍՀՄ (1959, 1961–65) չեմպիոն։

ՊՈՊԵՍԿՈՒ (Popescu) Յոն Ապոստոլ (1920–1984), ռումին բանագետ, բանաստեղծ, գրականագետ, հայագետ։ Հեղինակ է «Տրանսիլվանական նոր գրականությունը» (1945), «Յոն Պոպ Ռետեզանուլ. կյանքը և գործը» (1965) աշխ-ների, «Խոսք Մարկո Պոլոյին» (1974) և այլ բանաստեղծությունների ժող-ների, «1346 թ. գրված մի ավետարանի մասին» (1959), «1719 թ. ռումինա-հայկական մի փաստափուղթ» (1960), «Նիկուլայի ապակե սրբապատկերների արվեստը» (1969), «Ուսումնասիրություններ բանահյուսության և ժողովրդական արվեստի վերաբերյալ» (1970) և այլ գործերի։ Հրատարակել է «Տրանսիլվանիայի հայկական հեքիաթներ» (1967, հայ.՝ 1999) ժող-ը։

ՊՈՊԵՍԿՈՒ-ԳՈՊՈ (Popescu-Gopo) Յոն (1923–1989), ռումին կինոռեժ.։ Նկարահանել է «Կարճ պատմություն» (1956), «Homo sapiens» (1960) և այլ անիմացիոն, «Ռումբ են գողացել» (1962), «Ֆաուստ XX» (1966), «Հեքիաթ սիրո մասին» (1977), «Մարիա, Միրաբելա» (1982, ԽՍՀՄ-ի հետ) և այլ գեղ. կինոնկարներ։

ՊՈՊԵՐ (Popper) Դավիդ (1843–1913), չեխ թավջութակահար, կոմպոզիտոր։ 1868–73-ին՝ Վիեննայի պալատ. օպերայի նվագախմբի մենակատար։ Հեղինակ է ռոմանտիկ. ծրագր. պիեսների («Որս», «Տարանտելլա» ևն), թավջութակի և նվագախմբի կոնցերտների, լար. կվարտետների, թավջութակի սյուիտների և այլ գործերի։

ՊՈՊԵՐ Կաղլ Ռայմունդ (1902–1994), հրեա փիլ., տրամաբան և սոցիոլոգ։ 1945-ից՝ Մեծ Բրիտանիայում։ Առաջադրել է նենգափոխման (ֆալսիֆիկացման) սկզբունքը։ Պ-ի «երեք աշխարհների» տեսությունը հաստատում է ֆիզ. և բանական աշխարհների, նաև օբյեկտիվ գիտելիքի աշխարհի գոյությունը։ Քննադատել է մարքսիզմի և պատմականության սկզբունքը, պաշտպանել ռացիոնալիզմը։

ՊՈՊԻԳԱՅ, գետ Արլ. Սիբիրի հս-արմ-ում, թափվում է Խատանգայի խորշը։ Երկ.՝ 592 *կմ*, ավազանը՝ 50,3 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 400 *մ*^{3}/*վ*։

ՊՈՊԿՈՎ Պյոտր Սերգեևիչ (1903–1950), ռուս պետ. և կուս. գործիչ։ ՀՄՊ-ի ժամանակ՝ քաղաքի պաշտպ-յան կազմակերպիչներից։ 1946–ից՝ ՌԽՖՍՀ կոմկուսի Լենինգրադի մարզկոմի և քաղկոմի 1-ին քարտուղար։ 1949-ին անհիմն բռնադատվել է ***«Լենինգրադյան գործ»***-ով, գնդակահարվել։

ՊՈՊԿՈՎ Վալերի Իվանովիչ (1908–1984), ռուս էլեկտրատեխնիկ։ ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1966)։ Սոց. աշխ. հերոս (1978)։ Աշխ-նեքը վերաբերում են բարձր լարումների տեխնիկային, բարձր լարումների տակ գազերում էլ. պարպումներին, ուժեղ էլ. դաշտերին ևն։ ԽՍՀՄ Պետ. մրց. (1983)։

ՊՈՊԿՈՎ Վիտալի Իվանովիչ (1922–2010), ռուս օդաչու։ ԽՄ հերոս (1943, 1945), ավիացիայի գեն-լեյտ. (1968)։ ՀՄՊ-ի ժամանակ սավառնակախմբի հրամ.՝ կործանիչ ավիացիայում։ 107 օդ. մարտերում խփել է 41 ինքնաթիռ։

ՊՈՊՈԿԱՏԵՊԵՏԼ (Popocatépetl), գործող հրաբուխ Մեքսիկայի հվ-ում։ Բարձր.՝ 5465 *մ*։ Մշտապես ծխում է։ Ներառված է Իստակապուատլ-Պոպոկատեպետլ արգելոցի մեջ։

ՊՈՊՈՎ Ալեքսանդր Ստեպանովիչ (1859–1905/06), ռուս ֆիզիկոս-էլեկտրատեխնիկ, էլեկտրամագնիս. ալիքների գործն. (այդ թվում՝ ***ռադիոկապի***) կիրառության առաջամարտիկներից։ Ստեղծել է (1895) իր ժամանակի կատարյալ ռադիոընդունիչը՝ որպես էլեկտրամագնիս. ճառագայթման աղբյուր օգտագործելով Հերցի տատանակը։ Ռադիոընդունիչի հիմքի վրա ստեղծել է ամպրոպ. պարպումների գրանցման սարք, 1897-ին՝ անլար հեռագրի սարքը և մոտ 200 *մ* հեռ. հաղորդել 1-ին ռադիոգիրը՝ «Հերց»։ 1901-ին ռադիոկապի հեռ-յունը հասցրել է 150 *կմ*-ի։ Փարիզի համաշխ. ցուցահանդեսի ոսկե մեդալ (1900)։

ՊՈՊՈՎ Ալեքսանդր Վլադիմիրովիչ (ծ. 1971), ռուս լողորդ։ ԽՍՀՄ ս. վ. վ. (1992)։ Օլիմպ. խաղերի քառակի (1992-ին և 1996-ին՝ կրկնակի), աշխարհի 6-ակի [1994 (կրկնակի), 1998, 2003 (քառակի)] և Եվրոպայի բազմակի (1991–2004) չեմպիոն։ Աշխարհի գավաթակիր (1992, 1994)։ Սպրինտեր. և փոխանցումալողի ԽՍՀՄ և ՌԴ բազմակի (1991–96) չեմպիոն։

ՊՈՊՈՎ Ալեքսեյ Դմիտրևիչ (1892–1961), ռուս ռեժ.։ ԽՍՀՄ ժող. արտիստ (1948)։ Ա. Ա. ***Պոպովի*** հայրը։ 1935–58-ին՝ Խորհրդ. բանակի կենտր. թատրոնի գլխ. ռեժ. (Ն. Ֆ. Պոգոդինի «Իմ բարեկամը», 1932, Վ. Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ», 1935, «Անսանձ կնոջ սանձահարումը», 1937, ևն)։ ԽՍՀՄ Պետ. մրց. (1943, 1950, 1951)։

ՊՈՊՈՎ Անդրեյ Ալեքսանդրովիչ (1821–1898), ռուս նավաշինարար, ծովակալ (1891)։ 1860–90-ին ղեկավարել է ռուս. զրահապատ նավերի նախագծումն ու շին-յունը։

ՊՈՊՈՎ Անդրեյ Ալեքսեևիչ (1918–1983), ռուս դերասան, ռեժ.։ ԽՍՀՄ ժող. արտիստ (1965)։ Ա. Դ. ***Պոպովի*** որդին։ 1939–ից՝ Մոսկվայի խորհրդ. բանակի կենտր. թատրոնի (1963–73-ին՝ գլխ. ռեժ.), 1974–ից՝ ՄԳԱԹ-ի, 1977–ից՝ Կ. Ս. Ստանիսլավսկու անվ. դրամատիկ. թատրոնի գլխ. ռեժ.։ Նկարահանվել է կինոյում («Օթելլո», «Մի քանի օր Ի. Ի. Օբլոմովի կյանքից» ևն)։ ԽՍՀՄ Պետ. մրց. (1950)։

ՊՈՊՈՎ Գարրի Ալեքսեևիչ (ծ. 1934), մեքենաշինության բնագավառի ռուս. գիտնական։ ՌԳԱ ակադ. (2008)։ Աշակել է գերճշգրիտ ռեակտիվ շարժիչների պլազմ. հոսքերի վերլուծության եղանակ։

ՊՈՊՈՎ Եվգենի Անատոլևիչ (ծ. 1946), ռուս գրող։ Հեղինակ է «Սպասում եմ անդավաճան սիրուն» (1989), «Կյանքի գեղեցկությունը» (1990) պատմվածքների ժող-ների, «Հայրենասերի հոգին կամ Տարատեսակ ուղերձներ Ֆերֆիչկինին» (1989), ««Բերյոզկա» ռեստորանը։ Պոեմ և պատմվածքներ կոմունիստների մասին» (1991), «Նախօրեի նախօրեին» (1993, Ի. Ս. Տուրգենևի վեպի սյուժեի հենքով) վիպակների, նաև պիեսների։

ՊՈՊՈՎ Եվգենի Պավլովիչ (1914–1999), ավտոմատացման բնագավառի ռուս գիտնական։ Շարտարագետ-գեն-մայոր (1961)։ ՌԳԱ ակադ. (1992)։ Աշխ-ները վերաբերում են ավտոմատ կառավարման և կարգավորման (այդ թվում՝ թռչող սարքերի) տեսությանը։ ԽՍՀՄ Պետ. մրց. (1949, 1972)։

ՊՈՊՈՎ Լեոնիդ Իվանովիչ (ծ. 1945), ռուս տիեզերագնաց օդաչու, ավիացիայի գեն-մայոր։ ԽՄ հերոս (1980, 1981)։ Կատարել է տիեզ. 3 թռիչք (1980, 1981, 1982), ընդհ. տևողությունը՝ 200 օր 14 *ժ* 45 *ր*։

ՊՈՊՈՎ (Պապյանց) Լևոն Քրիստափորի (1881–1919), բժիշկ, խորհրդ. Կարմիր խաչի կազմակերպիչներից։ «Կարմիր խաչի տեղեկագրի» հիմնադիր-գլխ. խմբ. (1918–ից)։ Պ-ի անունով կոչվել է (1973) ջերմանավ։

ՊՈՊՈՎ Պավել Ստեպանովիչ (1842–1913), ռուս չինագետ։ Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1890)։ Հրատարակել է «Ռուսերեն-չինարեն բառարան» (1879)։ Թարգմանել է հին չին փիլ-ների գործերից։

ՊՈՊՈՎ Վալերի Գեորգիևիչ (ծ. 1939), ռուս գրող։ Հեղինակ է «Բնականոն ընթացք» (1976), «Երկու ուղևորություն դեպի Մոսկվա» (1985), «Նոր Շահարազադե» (1988), «Հարեմի առօրյան» (1994), «Յու քաղաքում» (1997), «Երրորդ շնչառություն» (2004), «Իմ Պետերբուրգը» (2014) և այլ վիպակների ու պատմվածքների։

ՊՈՊՈՎ Օլեգ Կոնստանտինովիչ (1930–2016), կրկեսի ռուս արտիստ, ծաղրածու։ ԽՍՀՄ ժող. արտիստ (1969)։ Ստեղծել է կայտառ երիտասարդի կերպար-դիմակ՝ օժտված ռուս. հեքիաթի խենթուկ-Իվանի հատկանիշներով (անվանել են «Արևային ծաղրածու»)։ 1991–ից՝ Գերմանիայում։

ՊՈՊՈՎ Ֆեդոտ Ալեքսեև (XVII դ.), ռուս ճանապարհորդ, ծովագնաց։ 1648-ին Ս. Ի. ***Դեժնևի*** հետ անցել է ծովերով, Կալիմա գետի ակունքից Անադիրի ծոց, հայտնագործել է նեղուց՝ Ասիայի և Ամերիկայի միջև (հետագայում կոչվել է Բերինգի նեղուց), թ-կղզի և Կամչատկա գետը։

ՊՈՊՈՎԻՉ (Popović, Ստերիա-Պոպովիչ) Յովան (1806–1856), սերբ դրամատուրգ։ Հեղինակ է «Մտախոսն ու փչանը» (1830), «Ժլատը» (1837), «Հայրենասերները» (1849) սոցիալ. թեմաներով կատակերգությունների, որոնցով դրել է սերբ. ազգ. թատրոնի խաղացանկի հիմքը։

ՊՈՊՈՎԻՉ Պավել Ռոմանովիչ (1930–2009), ռուս տիեզերագնաց օդաչու, ավիացիայի գեն-մայոր։ ԽՄ հերոս (1962,

1974): Կատարել է տիեզ. 2 թռիչք (1962, 1974), ընդհ. տևողությունը՝ 18 օր 16 *ժ* 26 *ր*:

ՊՈՊՈՎԻՉ (Popovici) Տիտուս (1930–1994), ռումին գրող: Հեղինակ է «Օտարը» (1955), «Ծարավ» (1958) սոցիալ–հոգեբ. վեպերի, «Իշխանություն և ճշմարտություն» (1973) և այլ դրամաների, նաև պատմվածքների, կինոսցենարների ևն:

ՊՈՊՈՒԼԱՑԻԱ (միջնադարի լատ.՝ populatio, < լատ. populus – ժողովուրդ, բնակչություն) (կենսբ.), տևականորեն որոշակի տարածք զբաղեցնող և մեծ թվով սերունդների ընթացքում ինքնավերարտադրվող միևնույն տեսակի առանձնյակների ամբողջությունը: Ժամանակակից կենսբ–յան մեջ Պ. դիտվում է որպես էվոլյուցիայի տարր. միավոր, որն ունակ է հակազդելու միջավայրի փոփոխություններին՝ իր գենոֆոնդի վերակառուցմամբ: Եզրույթն օգտագործում են նաև բջիջների որևէ խմբի համար և մարդաբանության մեջ:

ՊՈՊՈՒՐԻ (ֆրանս.՝ pot–pourri – խառը կերակուր, խառնուրդ), գործիք. պիես՝ կազմված հանրածանոթ որևէ օպերայի, բալետի եղանակներից, կոմպոզիտորի տարբեր գործերի մեղեդիներից, ժող. երգերից, պարերից, քայլերգերից, կինոնկարների երաժշտ. համարներից ևն: Տերմինը կիրառվել է 1711–ից, տարածվել՝ XIX դ–ից: Ստեղծվում են գործիք. տարբեր կազմերի, ավելի հաճախ՝ էստրադ. և փող. նվագախմբերի համար:

ՊՈՈՒՆԿՈՒԹՅՈՒՆ, մարմնավաճառություն, պարբեր. սեռ. հարաբերություններ՝ վճարման դիմաց: Որոշ երկրներում արգելված է, իսկ մի շարք երկրներում՝ օրենքով թույլատրելի:

ՊՈՌՆՈԳՐԱՖԻԱ (< հուն. pornos – անառակ և *գրաֆ*), սեռ. կյանքի գռեհիկ–բնապաշտ., անպարկեշտ պատկերումը գրկ–յան մեջ, կերպարվ–ում, թատրոնում, կինոյում: Մի շարք երկրներում Պ. ամբողջովին արգելված է, որոշ երկրներում թույլատրվում է սահմանափակումներով: Անօրինական գործողությունների (պատրաստում, տարածում, գովազդում) համար սահմանվում է վարչաքր. պատասխանատվություն:

ՊՈՍԱ ՌԻԿԱ (Poza Rica), **Պոսա Ռիկա դե Իդալգո**, ք. Մեքսիկայի Վերակռուս նահանգում: Բն.՝ 176 հզ. (2010): Արդյունահանում են նավթ և գազ:

ՊՈՍԱԴԱՍ (լատ.՝ Posadas), ք. Արգենտինայում՝ Պարանա գետի հվ. ափին, Միսիոնես պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 323,7 հզ. (2010): Հս. Արգենտինայի արդ–յան խոշոր կենտրոնն է և մատե թեյի հիմնական մատակարարը:

ՊՈՍԵՅԴՈՆ (Poseidon), հուն. դից–յան օլիմպ. աստվածներից: *Քրոնոսի* և *Հռեայի* որդին, ծովերի տիրակալը, որոնք կառավարել է եռաժանու օգնությամբ: Պ–ին համապատասխանում է հռոմ. *Նեպտունը*:

ՊՈՍԻԴՈՆԻՈՍ (Poseidonios, մ. թ. ա. մոտ 139/135–51/50), հույն ստոիկ փիլ.: Միջին ստոիկության խոշորագույն ներկայացուցիչ, Հռոդոս կղզու դպրոցի առաջնորդ, *Ցիցերոնի* ուսուցիչը: Պ. ստոիկությունը միավորել է պլատոնականության հետ: Աշխ–ները վերջնականորեն ձևավորել են անտիկ բնափիլ–յունը՝ մեծ ազդեցություն թողնելով ուշ շրջանի անտիկ փիլ–յան վրա:

ՊՈՍԻԵՏԻ ԾՈՈՑ, Պետրոս Մենծի ծոցի արմ. ափի մոտ՝ Շապրն. ծովում (ՌԴ Պրիմորիեի երկրամասում): Երկ.՝ մոտ 50 *կմ*, լայն.՝ 30 *կմ*, խոր.՝ 17–25 *մ*: Ծոցը կոչվել է ծովակալ Կ. Ն. Պոսիետի (1819–1889) անունով:

«ՊՈՍԼԱՆԻԵՑ ՇՎԻԵՆՏԻԵԳՈ ԳԱԶԵԳԱԶԱ» («Սբ Գրիգորի սուրհանդակ»), պատմաբանասիր., գր., մշակութ. և եկեղեց. հանդես (1927–39, Լվով՝ լեհ.): Հայ կաթոլիկ եկեղեցու, այնուհետև՝ Լվովի Հայոց թեմ. միության պաշտոն. հրտ–յուն: Խմբ.՝ Դյանուզու Կայետանովիչ:

ՊՈՍՄՆԻԿՈՎ Ալեքսանդր Սերգեևիչ (1846–1921), ռուս տնտեսագետ, հաս. և քաղ. գործիչ: 1886–96–ին՝ «Ռուսսկիե վեդոմոստի» (ռուս.) թերթի խմբ–ներից, 1901–ից՝ Ս. Պետերբուրգի ճարտարագիտ. ինստ–ի հիմնադիր–տնօրեն: 1912–ից՝ Պետ. դումայում պրոգրեսիստների ֆրակցիայի փոխնախագահ, 1917–ին՝ Ժամանակավոր կառ–յանը կից Գլխ. հող. կոմիտեի նախագահ: Գլխ. աշխ–ը՝ «Համայնական հողատիրություն» (ռուս., հ. 1–2, 1875–77):

ՊՈՍՈՒԽԻՆ Միխայիլ Վասիլևիչ (1910–1989), ռուս. ճարտ.: ԽՍՀՄ ժող. ճարտ. (1970): ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի ակադ. (1979): Մոսկվայի գլխ. ճարտ. (1960–82): Նախագծել է Մոսկվայի Կրեմլի համագումարների պալատը (1961, այժմ՝ Կրեմլյան պետ. պալատ), Նոր Արբատի կառուցապատումը (1964–69), Համաշխ. ցուցահանդեսի ԽՍՀՄ տաղավարները Մոնրեալում (1967) և Օսակայում (1970, երկուսն էլ՝ համահեղ.), ղեկավարել Մոսկվայի զարգացման գլխ. հատակագծի նախագիծը (հաստատվել է 1971–ին):

ԽՍՀՄ Պետ. (1949, 1980), Լենինյան (1962) մրց–ներ:

ՊՈՍՈՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 863, տեղի է ունեցել (սեպտ. 3) արաբ. և բյուզ. զորքերի միջև Պոսոն վայրում (Պափլագոնիայի և Արմենիակների բանակաթեմերի սահմանագլխին՝ Հալիս գետից արմ.՝ Լալակաոն գետի մոտ): Բյուզ. զորքերը հայազգի զորավար Պետրոնասի (տես *Պետրոնաս Սամիկոնյան*) գլխավորությամբ ջախջախել են արաբներին: Պ. ճ. Բյուզանդիայի առաջին մեծ. հաջողությունն էր Արևելքում գերիշխանության համար Արաբ. խալիֆության դեմ մղված պայքարում:

ՊՈՍՊԵԼՈՎ Գերմոգեն Սերգեևիչ (1914–1998), ավտոմատացման և տեղեկատվության ոլորտի ռուս. գիտնական: ՌԳԱ ակադ. (1984): Աշխ–ները վերաբերում են ավտոմատ կարգավորման և մեծ համակարգերի կառավարման տեսություններին, արհեստ. բանականության հարցերին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1972):

ՊՈՍՊԵԼՈՎ Պյոտր Նիկոլաևիչ (1898–1979), ռուս. կուս գործիչ, պատմաբան: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1953): Սոց. աշխ. հերոս (1958): 1940–49–ին՝ *«Պրավդա»* թերթի գլխ. խմբ.: 1953–60–ին՝ ԽՄԿԿ ԿԿ քարտուղար, 1961–67–ին՝ ՄԼԻ տնօրեն: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943):

ՊՈՍՍԱՐՏ (Possart) Էռնստ (1841–1921), գերմանացի դերասան, ռեժ.: 1864–ից՝ Մյունխենի պալատ. թատրոնի դերասան, ապա՝ ռեժ., գեղ. ղեկ.: Կերպարներն առանձնանում են փիլ. վերլուծությամբ (Մեֆիստոֆել՝ Յ. Վ. Գյոթեի «Ֆաուստ», Ֆրանց Մոոր՝ Ֆ. Շիլլերի «Ավազակներ», Յագո՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», ևն), բեմադրությունները՝ արտահայտիչ զանգված. տեսարաններով:

ՊՈՍՏ (Post) Էմիլ Լեոն (1897–1954), ամերիկացի տրամաբան, մաթեմատիկոս: Ձևակերպել է տրամաբ. հաշիվների անհակասականության և լրիվության գաղափարները, հետազոտել բազմարժեք տրամաբ–յունը, ապացուցել կիսախմբերում նույնության խնդրի այզորիթմ. անլուծելիությունը, որն այդօրինակ խնդրի առաջին օրինակն է:

ՊՈՍՏԻՄՊԵՍԻՈՆԻԶՄ (< լատ. post – հետո և *իմպրեսիոնիզմ*), **հետիմպրեսիոնիզմ**, XIX դ–ի վերջ–XX դ–ի սկզբի հոսանքների ընդհ. անվանումը գեղանկարչության մեջ: Ծագել է Ֆրանսիայում՝ որպես իմպրեսիոնիզմի հակազդեցություն: Պ–ի ներկայացուցիչները ձգտել են գտնել դարաշրջանին առավել համահունչ արտահայտչամիջոցներ, հաղթահարել գեղ. մտածողության էմպիրիզմը և իմպրեսիոնիզմին բնորոշ, կյանքի որոշ պահերի անմիջական սևեռակումից անցնել նրա հոգևոր և նյութ. մարմնավորմանը: Պ. արտացոլվել է Պ. Սեզանի, Վ. Վան Գոգի, Պ. Գոգենի, Ա. Թուլուզ Լոտրեկի, *նևոիմպրեսիոնիզմի*, «*նաբի*» խմբի ներկայացուցիչների գործերում:

ՊՈՍՏՆԻԿ, XVI դ–ի ռուս. ճարտ–ներ: 1. **Պոստնիկ Յակովլև**, կառուցել է Կազանի Կրեմլի հվ. պատերն ու աշտարակները (1556–62) և Ավետման տաճարը (1562, երկուսն էլ՝ Ի. Շիրյայի հետ): Նրան է վերագրվում նաև Սվիյաժսկի Վերափոխման տաճարի (1560) կառուցումը:

2. Պ. Մոսկվայի Վասիլի Երանելու տաճարի (1550–60) կառուցողը (Բարմայի հետ): Ենթադրաբար նույնացնում են 2 Պ–ներին, նաև 2–րդ Պ–ին և Քարմային:

ՊՈՍՏՈՎՍԿԻ Իսահակ Յակովլևիչ (1898–1980), ռուս. քիմիկոս–օրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1970): Սուլֆամիդային պատրաստուկների ռուս. արտադր–յան կազմակերպիչներից: Աշխ–ները վերաբերում են ֆիզիոլոգիապես ակտիվ և ֆտորօրգ. միացությունների քիմիային: Բացահայտել է սուլֆիդինը (1935): ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1951):

ՊՈՍՏՈՒԼԱՏ (լատ.՝ postulatum – պահանջ), **կանխադրույթ**, որևէ գիտ. տեսության մեջ որպես ճշմարտություն ընդունված, այդ տեսության միջոցով անապացուցելի և այդ պատճառով աքսիոմի նշանակություն ունեցող պնդում (դատողություն):

«ՊՈՍՐԵԴՆԻԿ» («Միջնորդ», ռուս.), լուսավոր. հրտչ–յուն: Գործել է Ս. Պետերբուրգում (1884–92), Մոսկվայում (1893–1935): Հիմնադրվել է Լ. Ն. *Տոլստոյի* նախաձեռնությամբ: Տպագրել է հանրամատչելի գրկ., «Մայակ», «Սվոբոդնոե վոսպիտանիե» (ռուս.) և այլ հանդեսներ, 1917–ից՝ հիմնականում մանկ. գրկ.:

ՊՈՎԻԴԼՈ (լեհ.՝ powidlo), սննդամթերք, ստանում են մրգերի և պտուղների խյուսը շաքարի հետ եփելով:

ՊՈՏ (Pott) Ավգուստ Ֆրիդրիխ (1802–1887), գերմանացի լեզվաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1855): Պատմահամեմատ. լեզվաբ–յան և գիտ. ստուգաբանության հիմնադիրը: Հեղինակ է լեզվաբ. տիպաբանությանը, ընդհ. լեզվաբ–յանը, հնդեվրոպ. հնչյունաբանությանը, դից–յանը և մշակույթին, անվանաբանությանը վերաբերող աշխ–ների:

ՊՈՏԱՆԻՆ Գրիգորի Նիկոլաևիչ (1835–1920), ռուս աշխարհագետ: Հետազոտել է Կենտր. Ասիան և Սիբիրը: 1863–99–ին (ընդմիջումներով) իրականացրել է մի շարք արշավներ՝ Ջայսան լիճ, Տիբեթ, Մոնղոլիա, Տուվա, Հս. Չինաստան, Մեծ

Հինգա, հայտնագործել է (Մ. Վ. Պևցովի հետ) Մեծ լճերի գետահովիտը: Կնոջ՝ Ա. Վ. Պոտանինայի հետ հավաքել է ազգագր. արժեքավոր նյութ:

ՊՈՏԵԲՆՅԱ, Ալեքսանդր Աֆանասևիչ (1835–1891), ռուս. բանասեր, սլավոնագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1875): Ռուս. լեզվաբ–յան մեջ զարգացրել է հոգեբ. ուղղությունը: Հեղինակ է ընդհ. լեզվաբ–յանը, բանասիր. տեսությանը, բարբառագիտ–յանը, տիպաբանությանը, ոճագիտ–յանը, գր. լեզվին վերաբերող աշխ–ների:

ՊՈՏՏԵՆ (Potain) Պիեռ Կառլ Էդուար (1825–1901), ֆրանսիացի թերապևտ: Սրտաբանության հիմնադիրներից: Աշխ–ները վերաբերում են արյան շրջանառության և շնչառության օրգանների հետազոտման մեթոդներին:

ՊՈՏԵՆՑԻԱԼ, **պոտենցիալ ֆունկցիա**, ֆիզ. ուժ. դաշտերը (էլ., ձգող. ևն) և վեկտորներով ներկայացվող դաշտի ֆիզ. մեծությունները (հեղուկի արագությունների դաշտը ևն) բնութագրող հասկացություն: Ընդհ. դեպքում վեկտոր. դաշտի Պ.՝ α (x, y, z), այնպիսի u (x, y, z) սկալյար ֆունկցիա է, որ α = grad u:

ՊՈՏԵՆՑԻԱԼ ԱՐԳԵԼՔ, ուժ. դաշտում մասնիկի բարձր պոտենցիալ էներգիայի տարածականորեն սահմանափակ մարզ. համապատասխանում է վանող. ուժերին: Ըստ քվանտ. տեսության, եթե մասնիկի E լրիվ էներգիան ցածր է Պ. ա–ի բարձր–յունից՝ U_∞, այն որոշ հավանականությամբ կարող է ***թունելային էֆեկտով*** «անցնել» Պ. ա., իսկ եթե $E > U_\infty$՝ կանդրադառնա նրանից:

ՊՈՏԵՆՑԻԱԼ ԲՈՑՎԱԾՈՒՄԸ, գազում էլեկտրոդների միջև պոտենցիալների այն նվազագույն տարբերությունը, որի դեպքում առաջանում է ինքնաբեր էլ. պարպում՝ գազի լուսարձակմամբ:

ՊՈՏԵՆՑԻԱԼ ԴԱՇՏ, **վեկտորական դաշտ**, տարածք, որի ցանկացած p կետում տրված է **a**(p) վեկտորը: Պ. դ–ի հասկացությանն են հանգեցնում բազմաթիվ ֆիզ. երևույթներ և շարժընթացներ (օր.՝ շարժվող հեղուկի մասնիկների արագությունների վեկտորները ժամանակի յուրաքանչյուր պահի առաջացնում են Պ. դ.):

ՊՈՏԵՆՑԻԱԼ ԷԼԵԿՏՐԱՍՏԱՏԻԿԱԿԱՆ, էլեկտրաստատիկ. դաշտի էներգ. բնութագիր. հավասար է այդ դաշտում լիցքի պոտենցիալ էներգիայի և լիցքի մեծության հարաբերությանը: Ֆիզ. իմաստ ունի ոչ թե կամայական հաստատունի ճշտությամբ որոշվող պոտենցիալը, այլ պոտենցիալների տարբերությունը:

ՊՈՏԵՆՑԻԱԼ ԷՆԵՐԳԻԱ, համակարգի ընդհ. մեխ. էներգիայի մաս, որը կախված է նրա մասնիկների փոխդասավորությունից և արտաքին ուժ. դաշտում (օր.՝ ձգող.) նրանց դիրքից:

ՊՈՏԵՆՑԻԱԼ ԹԵՐՄՈԴԻՆԱՄԻԿԱԿԱՆ, թերմոդինամիկ. համակարգի վիճակը բնութագրող մակրոսկոպիկ հարաչափերի՝ ծավալի, ճնշման, ջերմաստիճանի, էնտրոպիայի, մասնիկների թվի և այլ ֆունկցիաներ: Պ. թ. են ներքին էներգիան, ջերմպարունակությունը, իզոխոր–իզոթերմ (Հելմհոլցի էներգիա), իզոբար–իզոթերմ (Գիբսի էներգիա) պոտենցիալները: Իմանալով որևէ Պ. թ. որպես հարաչափերի ամբողջ լրակազմի ֆունկցիա՝ կարելի է որոշել համակարգի ցանկացած մակրոսկոպիկ բնութագիր և հաշվարկել այնտեղ տեղի ունեցող շարժընթացները:

ՊՈՏԵՆՑԻԱԼ ՈՒԺԵՐ, ուժեր, որոնց աշխ–ը կախված է նրանց կիրառման սկզբն. և վերջն. կետերի դիրքերից և կախված չէ ոչ հետագծի տեսքից, ոչ էլ այդ կետերի շարժման օրենքից:

ՊՈՏԵՆՑԻԱԼ ՓՈՍ, տարածության սահմանափակ տիրույթ, որտեղ մասնիկի պոտենցիալ էներգիայի արժեքներն ավելի փոքր են, քան նրանից դուրս: Եզրույթը պայմանավորված է պոտենցիալ էներգիայի կոօրդինատներից կախվածության գրաֆիկի տեսքով: Պ. փ–ի խոր–յունից փոքր էներգիա ունեցող մասնիկը գտնվում է կապված վիճակում, քվանտ. տեսության համաձայն՝ այդպիսի մասնիկի էներգիան կարող է ունենալ միայն որոշակի ընդհատուն (դիսկրետ) արժեքներ:

ՊՈՏԵՆՑԻԱԼԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ, քանակ. վերլուծության և քիմ. շարժընթացների կինետիկայի ուսումնասիրման էլեկտրաքիմ. եղանակ՝ ինդիկատոր. էլեկտրոդով գալվան. էլեմենտի էլշուն չափելու միջոցով: Կիրառվում է իոնների ակտիվությունը չափելու և տիտրման համար:

ՊՈՏԵՆՑԻԱԼՆԵՐԻ ՀՊՈՒՄԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ, էլ. պոտենցիալների տարբերությունը (U) 2 համաշփվող հաղորդիչների միջև թերմոդինամիկ. հավասարակշռության պայմաններում: Առաջանում է ջերմազույգերում, ջերմագեներատորներում, կիսահաղորդչ. դիոդներում ևն, կարող է հասնել մի քանի Վ–ի՝ կախված հաղորդչի հատկություններից և նրա մակերևույթի վիճակից:

ՊՈՏԵՆՑԻԱԼՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ էլեկտրական դաշտի երկու կետերի միջև (էլ. լարում), հավասար է էլ. դաշտի միավոր դրական լիցքը դաշտի մի կետից մեկ այլ կետ տեղափոխման համար կատարված աշխ–ին:

ՊՈՏԵՆՑԻԱԶԱՓ (լատ.՝ potentia – ուժ), 1. էլշուն կամ լարումը չեզոքացման եղանակով չափման սարք: Դիմադրության չափերի կամ չափիչ–փոխակերպիչների հետ համատեղ օգտագործելով՝ կարելի է որոշել նաև հոսանքի ուժն ու հզորությունը, ջերմաստիճանը, ճնշումը ևն: Տարբերում են հաստատուն և փոփոխ. հոսանքի Պ–ներ: 2. Լարման բաժանարարի սխեմայով միացված փոփոխ. ռեզիստոր:

ՊՈՏԵՆՑՈՄԵՏՐ (գերմ.՝ Potenz – աստիճան), թվի լոգարիթմով տվյալ թիվը գտնելու գործողությունը:

ՊՈՏԻԵ (Pottier) Էժեն (1816–1887), ֆրանսիացի բանաստեղծ: Փարիզի կոմունայի մասնակից (1871): Հեղինակ է «Ինտերնացիոնալ» (1871, երաժշտությունը՝ Պ. Դեգեյթերի, 1888, հայ.՝ 1906) երգի տեքստի, նաև «Ամերիկայի բանվորներըը՝ Ֆրանսիայի բանվորներին» (1876), «Փարիզի կոմունա» (1877), «Բանվորական կուսակցություն» (1878) պոեմների, «Պատանի մուսան» (1830), «Ո՞վ է արդյոք խենթը» (1884), «Հեղափոխական երգեր» (1887) ժող–ների:

ՊՈՏՅՈՄԿԻՆ Գրիգորի Ալեքսանդրովիչ (1739–1791), ռուս պետ. և ռազմ. գործիչ, դիվանագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. անդամ (1776/77), գեն–ֆլդմ. (1784): 1762–ի պալատ. հեղաշրջման (գահ է բարձրացել *Եկատերինա II*–ը) մասնակիցներից: Կայսրուհու մերձավորներից էր: 1783–ին իրագործել է Ղրիմը Ռուսաստանին միացնելու իր ծրագիրը, որի համար ստացել է Տավրիկյան իշխանի տիտղոս: 1784–91–ին՝ Ռազմ. կոլեգիայի նախագահ: 1787–91–ի ռուս–թուրք. պատերազմի ժամանակ՝ բանակի գլխ. հրամ.: Սերտ կապեր է ունեցել Հովհաննես *Լազարյանի* և Հովսեփ *Արղությանի* հետ: 1770–ական թթ–ին առաջադրել է Այսրկովկասում վրաց. և հայկ. բուֆերային պետություններ ստեղծելու նախագիծ: Փայփայել է Հայաստանի թագավոր դառնալու միտքը:

ՊՈՏՅՈՄԿԻՆ Պավել Սերգեևիչ (1743–1796), ռուս պետ. և ռազմ. գործիչ, գեներալ–անշեֆ, Կովկասի գեն–նահանգապետ, գրող: Գործուն մասնակցություն է ունեցել *Գեորգիևսկի պայմանագրի* (1783) կնքմանը: Մերձավոր կապեր է ունեցել Հովսեփ արք. Արղությանի և Արցախի հայ մելիքների հետ: Հեղինակ է «Պատմություն Պուգաչովի մասին» և «Կովկասյան ժողովուրդների նկարագրությունը» (անտիպ) գործերի, բանաստեղծությունների:

ՊՈՏՅՈՄԿԻՆ Վլադիմիր Պետրովիչ (1874–1946), ռուս պետ. գործիչ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1943): 1940–ից՝ ՌԽՖՍՀ լուսժողկոմ: 1943–ից՝ ՌԽՖՍՀ ՄԳԱ նախագահ: Աշխ–ները վերաբերում են Ֆրանսիայի պատմությանը, անգլ. բանվ. շարժմանը, միջազգ. հարաբերություններին: «Դիվանագիտության պատմություն» (հ. 1–3, 1941–45) աշխ–յան գլխ. խմբ.: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942, 1946):

«ՊՈՏՅՈՄԿԻՆ» («Իշխան Պոտյոմկին Տավրիկյան»), Սևծով. նավատորմի զրահանավ, որի վրա 1905–ի հունիսի 14–15–ին տեղի է ունեցել 1–ին զանգված. հեղ. ելույթը Ռուսաստանի ԶՈՒ–ում՝ 1905–1907–ի հեղ–յան ժամանակ: Զտտանալով այլ ռազմանավերի աջակցությունը՝ «Պ.» Կոստանցայում հանձնվել է Ռումինիայի իշխանություններին:

ՊՈՏՈՄԱԿ (Potomac), գետ ԱՄՆ հս–արլ–ում: Կազմավորվում է Հս. և Հվ. Պ–ների միախառնումից, որոնք սկիզբ են առնում Ապալաչներից, հոսում Մերձատլանտ. ցածրավայրով, թափվում Ատլանտ. օվկ.: Երկ.՝ էստուարի հետ՝ 780 *կմ*, ավազանը՝ 37,5 $կմ^2$, ջրի միջին ծախսը՝ 350 $մ^3/վ$: Պ–ի վրա է ԱՄՆ մայրաքաղաքը՝ Վաշինգտոնը:

ՊՈՏՈՍԻ (Potosi), ք. Բոլիվիայում, համանուն դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 168,4 հզ. (2010): Կապարի արդյունահանման կենտրոն է: Պատմաճարտ. հուշարձաններից են Սան Լորենսո (մոտ 1548–1728) բարոկկո ոճի եկեղեցին, փողերանոցը (1759–73, այժմ՝ Ազգ. թանգարան), որոնք Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում են: Հիմնադրվել է 1545–ին:

ՊՈՏՍԴԱՄ (Potsdam), ք. Գերմանիայում, Բրանդենբուրգ երկրի վարչ. կենտրոնը՝ Հաֆել գետի և մի քանի միմյանց միացած լճերի ափին՝ Բեռլինից հվ–արմ.: Բն.՝ 195 հզ. (2010): Զարգացած են մեքենաշինությունը և քիմիահաղեղագործությունը: Կա աստղադիտարան: Հայտնի է X դ–ի վերջից: XVIII դ–ում՝ պրուս. թագավորների 2–րդ նստավայրը: 1945–ին Պ–ում է անցկացվել ԽՍՀՄ, ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի Կառ–յունների ղեկ–ների համաժողովը՝ ***Պոտսդամի խորհրդաժողով 1945***: Կան XVIII–XIX դդ–ի պալատներ և եկեղեցիներ, այդ թվում՝ Սան Սուսիի պալատը և պուրակը (1746–51)՝ Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է: Զարգացած է գրոսաշրջությունը:

ՊՈՏՍԴԱՄԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ 1945, **Բեռլինի խորհրդաժողով**, ԽՍՀՄ–ի, ԱՄՆ–ի և Մեծ Բրիտանիայի Կառ–յունների ղեկ–ների [Ի. Վ. Ստալին, Հ. Տրումեն, Ու. Չերչիլ (հուլիսի 28–ից՝ Ք. Էտլի)] խորհրդաժողովը հուլիսի 17–օգոստ. 2–ին Պոտսդամում (Բեռլինի մոտ): Քննարկել է Գերմանիայի ապառազմականացման, նացիզմի վերացման, դեմոկրատացման, Լեհաստանի արմ. սահմանների, Քյոնիգսբերգ ք–ը (1946–ից՝ Կալինինգրադ) սահմանակից շրջանով ԽՍՀՄ–ին հանձնելու և այլ հարցեր, ընդունել որոշում: Խորհրդ. պատվիրակությունն արձարծել է Թուրքիային անցած հայկ. տարածքները վերադարձնելու հարցը, որը չեն պաշտպանել Մեծ Բրիտանիան և ԱՄՆ–ն:

ՊՈՏՍԴԱՄԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 1911, կնքել են Ռուսաստանն ու Գերմանիան Պոտսդամում: Գերմանիան Հս. Իրանը ճանաչել է որպես ռուս. ազդեցության ոլորտ, իսկ Ռուսաստանը պարտավորվել է չխոչընդոտել ***Բաղդադի երկաթուղու*** կառուցմանը:

ՊՈՏՏԵՐ (Potter) Պաուլյուս (1625–1654), հոլանդացի գեղանկարիչ: Հոլ. անիմալիստ. ժանրի հիմնադիրը: Պատկերել է որսի տեսարաններ, ագարակներ, արոտավայրեր ևն («Երիտասարդ ցուլը», 1647, «Ագարակ», 1649, ևն):

ՊՈՏՏՈ Վասիլի Ալեքսանդրովիչ (1836–1911), ռուս. պատմաբան (ծագումով՝ գերմանացի), կովկասյան պատմության մասնագետ, հեծելազորի գեն–լեյտ. (1907): Ղրիմի պատերազմի (1853–56) ժամանակ մասնակցել է Կարսի ազատագրմանը (1855): 1887–ից ծառայել է Կովկասյան ՋՕ–ում, 1896–ից՝ ՋՕ–ի շտաբի ռազմապատմաբան. բաժնի պետ: Հեղինակ է Կովկասյան պատերազմին (1817–64) նվիրված աշխ–ների («Կովկասյան պատերազմը առանձին հուշագրություններում, դրվագներում, ավանդապատումներում և կենսագրություններում», հ. 1–5, 1887–89, «21–րդ հետևակային գնդի ռազմական ճանապարհը», 1888, «Ղարաբաղի առաջին կամավորականները. Մելիք–Վանի և Հակոբ–յուզբաշի Աթաբեկյաններ», 1889, «Գեներալ–ադյուտանտ Իվան Դավիթի Լազարև», 1900 ևն):

ՊՈՏՈՒՐՅԱՆ Մկրտիչ Եփրեմի (1881–1959), հոգևոր գործիչ, հայագետ, հրապարակագիր, գրող, խմբ.: ՎնտՄՄ անդամ (1902–ից): Տրանսիլվանիայի Ֆրումոասա ավանի հունգարացած հայերի հոգևոր առաջնորդ՝ 1929–59–ին: 1909–ին՝ «Բազմավէպ», 1911–ին՝ «Աստղիկ», 1923–24–ին՝ «Դիցաւան» տարեգրքի, 1937–38–ին՝ «Հերկ» պարբ–ների խմբ.: 1909–11–ին՝ Վենետիկի մոնդ–ի տնօրեն: Բուխարեստում հրատարակել է «Մասիս» (1920–22), «Նաւասարդ» (1923–24), «Երկիր» (1925–29), «Հայ մամուլ» (1934–42) պարբ–ները, «Ռումինահայ տարեցոյցը» (1935), «Գաղութահայ տարեգիրքը» (1939–41), ***«Հայ հանրագիտակ»*** (1938–40) պատկերազարդ տեղեկատուն: Հեղինակ է Կոստանդին Երզնկացու (1905), Առաքել Սյունեցու (1907, 1914), Մարտիրոս Ղրիմեցու (1924) մասին երկերի, «Հայ մամուլը տասնևհինգ տարուն մէջ. 1894–1909» (1910), «Մխիթար եւ Մխիթարեանք» (1922) և այլ աշխ–ների: Կատարել է թարգմ–յուններ:

ՊՈՐԱՅ–ԿՈՇԻՑ Ալեքսանդր Եվգենևիչ (1877–1949), ռուս. քիմիկոս–օրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1935): Աշխ–ները վերաբերում են ներկանյութերի սինթեզին և տեխնոլոգիային, ներկման տեսությանը: Ներկանյութերի արդ–յան կազմակերպիչ–ներից է: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943):

ՊՈՐԵ, Բորե (Boré), Եվգենես (1809–1878), ֆրանսիացի հայագետ: ՎնտՄՄ անդամ (1835): Թարգմանել է Աբրահամ Անկյուրացու երկը (հրտ.՝ 1833), հատված՝ Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմից (հրտ.՝ 1835), Մովսես Կաղանկատվացու «Աղուանից պատմութիւն»–ը (հրտ.՝ 1846, «Կաթոլիկական տիեզերք» գրքում) և այլ գործեր:

ՊՈՐԵՅ, սոխուկավորների ընտանիքի սոխ ցեղի երկամյա և բազմամյա խոտաբույս: Մննդի մեջ օգտագործում են կեղծ ցողունի ստորին մասը և մատղաշ տերևները:

ՊՈՐԹՄԱՆ (Porthan) Հենրիկ Գաբրիել (1739–1804), ֆինն լուսավորիչ, պատմաբան, ազգագրագետ: Հավաքել և 5 հատորով տպագրել է (1766–1804) ֆիննական բանահյուսության նյութեր:

ՊՈՐԿՈՒՊԱՅՆ (Porcupine), գետ Կանադայում և ԱՄՆ–ում (Ալյասկայում), Յուկոն գետի աջ վտակը: Երկ.՝ 953 *կմ*, ավազանը՝ 78 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 320 *մ*^{3}/*վ*: Ալյասկայի սահմաններում նավարկելի է:

ՊՈՐՈՆԱՅ, գետ Սախալին կղզում: Երկ.՝ 350 *կմ*, ավազանը՝ 1990 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 120 *մ*^{3}/*վ*: Սաղմոնների ձուկպադրման վայր է:

ՊՈՐՈՇԵՆԿՈ Պյոտր Ալեքսեևիչ (ծ. 1965), ուկրաինացի պետ. գործիչ, մեծահարուստ–ձեռնարկատեր, Ուկրաինայի նախագահ՝ 2014–ից: Ուկրաինայի վաստ. տնտեսագետ (1997): 2000–04–ին՝ Ուկրաինայի ազգ. բանկի փոխնախագահ, 2004 և 2009–ին՝ ԱՄ և պաշտպ–յան, 2009–2010–ին՝ ԱԳ, 2012–ին (մարտ–դեկտ.)՝ տնտ. զարգացման և առևտրի նախարար: Ուկրաինայի՝ ՆԱՏՕ–ին անդամակցության, Ղրիմի վերադարձման ջատագովներից է:

ՊՈՐՉԻՆՍԿՈՒ ԺԱՅՌԱՅԻՆ ՄՈՂԵՍ (Darevskia porschinski), **Կուրի ժայռային մողես**, *իսկական մողեսների* ընտանիքի Դարևսկիա սեռի մողես: Բարեկազմ, տափակ մարմնով փոքր մողես է. երկ. տրիքի հետ փոխվում է (2,5–6,7 *սմ*), պոչը գրեթե կրկնակի երկար է, ինքնահատվող: Մնվում է մանր հոդվածոտանիներով, փափկամարմիններով և մանր մողեսներով: ՀՀ–ում հանդիպում է Տավուշի և Լոռու մարզերի ժայռային և քարքարոտ վայրերում, շինությունների պատերի ճեղքերում և այլուր:

ՊՈՐՊՈՐԱ (Porpora) Նիկոլա (1686–1768), իտալացի կոմպոզիտոր, կապելմայստեր: Նրա 50–ից ավելի օպերա–սերիաները («Ագրիպինա», 1708, ևն) XVIII դ–ի բելկանտոյի արվ–ի և ոճի դաս. նմուշներից են: Աշակերտներից է Յ. Հայդնը:

ՊՈՐ–ՌՈՅԱԼՅԱՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, տրամաբ. ուսմունք, որի հիմքում Ռ. *Դեկարտի* և Բ. *Պասկալի* փիլ–յան սկզբունքներն են: Պ–Ռ. տ–յան հիմն. գաղափարները շարադրված են Ա. *Առնոյի* և Պ. *Նիկոլի* «Տրամաբանություն կամ մտածելու արվեստ» (1662) աշխ–յան մեջ, որտեղ տրամաբ–յունը դիտվում է իբրև ճշմարտության հաստատման մեթոդները ձևակերպող գիտ–յուն:

ՊՈՐՏ (Port) Մարտ Յանի (1922–2012), էստոնացի ճարտ., քաղաքաշինարար: ԽՍՀՄ ժող. ճարտ. (1978): Համահեղինակ է բնակելի շրջանների, «Վիրու» հյուրանոցի (1972, բոլորը՝ Տալլինում), Տալլինի գլխ. (հաստատվել է 1971–ին) հատակագծերի: Էստ. ԽՍՀ (1972), ԽՍՀՄ (1986) Պետ. մրց–ներ:

ՊՈՐՏ ԷԼԻԶԱԲԵԹ (Port Elizabeth), ք. ՀԱՀ հվ–ում: Բն.՝ 1,2 մլն (2012): Նվինգստ՝ Հնդ. օվկ–ի ափին:

ՊՈՐՏ ԼՈՒԻ (Port Louis), Մավրիկիոս պետության մայրաքաղաքը (1968–ից), համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 156 հզ. (2010): Ծով. նվինգստ է: Գործում են պատմ. թանգարանը, պատկերասրահը: Հիմնադրվել է 1735–ին: Ապրավասի–Գհատ ներգաղթակայանը Համաշխ. մշակույթ. ժառանգության ցանկում է:

ՊՈՐՏ ՀԱՐԿՈՒՐՏ (Port Harcourt), ք. Նիգերիայի հվ–ում, Ռիվերս նահգ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 2,1 մլն (2010): Նվինգստ՝ Գվինեայի ծոցի ափին: Ունի օդանավակայան: Նավթի և գազի արդյունահանման կենտրոն է:

ՊՈՐՏ ՄՈՐՍԲԻ (Port Moresby), Պապուա Նոր Գվինեա պետության մայրաքաղաքը (1975–ից) և գլխ. նվինգստ–ը: Բն.՝ 307,1 հզ. (2010): Ունի օդանավակայան, համալսարան: Երկրի գլխ. տնտ. կենտրոնն է:

ՊՈՐՏ ՍԱԻԴ (Port Said), ք. Եգիպտոսում, համանուն մուհաֆազի վարչ. կենտրոնը, Միջերկր. ծովի ափին՝ Սուեզի ջրանցքի ելքի մոտ: Բն.՝ 607 հզ. (2010): Ծով. նվինգստ է: Առևտրատրանսպորտ. և բունկեր. միջազգ. նշանակության կենտրոն է: Հիմնադրվել է 1859–ին՝ ջրանցքի կառուցման ժամանակ:

ՊՈՐՏ ՍՏԵՆԼԻ (Port Stanley), ք., Ֆոլկլենդյան (Մալվինյան) կղզիների վարչ. կենտրոնը՝ Արլ. Ֆոլկլենդ կղզում: Բն.՝ 2,2 հզ. (2010): Նվինգստ է:

ՊՈՐՏ ՍՈՒԴԱՆ (Port Sudan), ք. Սուդանում, երկրի գլխ. նվինգստ–ը՝ Կարմիր ծովի ափին: Բն.՝ 580 հզ. (2010):

ՊՈՐՏ ՎԻԼԱ (Port Vila), Վանուատուի մայրաքաղաքը՝ Էֆատ կղզում: Բն.՝ 47,5 հզ. (2010): Նվինգստ է: Ունի օդանավակայան: Երկրի գլխ. տնտ. կենտրոնն է:

ՊՈՐՏ Օ ՊՐԵՆՍ (Port au Prince), *Հայիթիի* մայրաքաղաքը (1804–ից): Բն.՝ 785,2 հզ. (ագլոմերացիայում՝ 1,8 մլն, 2010): Երկրի գլխ. նվինգստն է: Ունի օդանավակայան, համալսարան, Ազգ., հայիթյան ժողդ–ի, գեղարվ–ի թանգարաններ: Հիմնադրել են ֆրանսիացիները 1749–ին: 1770–ից՝ Սան Դոմինգո ֆրանս. գաղութ: Խիստ տուժել է 2010–ի երկրաշարժից:

ՊՈՐՏ ՕՖ ՍՊԵՅՆ (Port of Spain), *Տրինիդադ և Տոբագո* պետության մայրաքաղաքը (1962–ից)՝ Տրինիդադ կղզում: Բն.՝ 50 հզ. (2010): Ծով. նվինգստ է: Ունի օդանավակայան, համալսարան: Հիմնադրել են իսպանացիները: XVIII դ–ի վերջից՝ Տրինիդադ գաղութի գլխ. քաղաքը:

ՊՈՐՏԱ (Porta) Ջակոմո դելլա (1540–1602), իտալացի ճարտ.: Նախագծել է Հռոմի Իլ Ջեզու եկեղեցու ճակատը (1571–73), 1573–ից ղեկավարել Հռոմի Սբ Պետրոսի տաճարի շին–յունը, կառուցել գլխ. գմբեթը:

ՊՈՐՏԱԲՈՒԽԹՈՒԹՅՈՒՆ, լայն իմաստով՝ մակարույծ գոյություն հաս–յան հաշվին: Առաջացել է հաս–յան զարգացման այն փուլում, երբ ստեղծվել է ուրիշի հաշվին ապրելու հնարավորություն: Ունի բացահայտ (թափառաշրջություն, մուրացկանություն, գողություն, խարդախություն) և թաքնված (վաշխառություն, սպեկուլյացիա ևն) ձևեր:

ՊՈՐՏԱԼԱՐ, մարդու և ընկերքավոր կաթնասունների պտուղն ընկերքին միացնող

օրգան: Պ-ով անցնում են 2 պորտ. զարկերակներ և պորտ. երակը:

ՊՈՐՏԱՅԻՆ ԱՐՅՈՒՆԱՎԱՐԱԿՈՒՄ, նորածինների վարակիչ հիվանդություն՝ պայմանավորված պորտի վերքից արյան մեջ հիվանդածին մանրէների ներթափանցմամբ: Ախտանշանները՝ մարմնի զանգվածի նվազում, ործկում, փսխումներ, կրծքից հրաժարում, պորտի վերքի դանդաղ ապաքինում: Նման դեպքերում հարկավոր է նորածնին անհապաղ հոսպիտալացնել:

ՊՈՐՏԵՐ (Porter) Ջորջ (1920–2002), անգլիացի ֆիզքիմիկոս: ՌԳԱ արտ. անդամ (1988): Աշխ-ները վերաբերում են գազ. ֆազում ընթացող արագ լուսաքիմ. ռեակցիաների կինետիկային: Մշակել է (1950, Ռ. *Նորիշի* հետ) իմպուլս. լուսաքիմ. տարրալուծման եղանակը: Նոբելյան մրց. (1967, Մ. *Էյգենի* և Ռ. *Նորիշի* հետ):

ՊՈՐՏԵՐ Ռոդնի Ռոբերտ (1917–1985), անգլիացի իմունաբան, կենսաքիմիկոս: Հետազոտել է հակամարմինների կառուցվածքը և նրանց ակտիվ կենտրոնը: Հաստատել է իմունոգլոբուլինների առաջն. կառուցվածքը: Նոբելյան մրց. (1972, Ջ. Մ. *Էդելմանի* հետ):

ՊՈՐՏԻՆԱՐԻ (Portinari) Կանդիդո (1903–1962), բրազիլացի նկարիչ: Ստեղծել է ռեալիստ. պատկերներ («Սուրճ», 1935, Ռ. Ռոլանի դիմանկարը, 1936), մոնումենտալ որմնանկարներ (Կատագուազիսի քոլեջում, 1948–49), պաննոներ («Պատերազմ» և «Խաղաղություն», 1955, երկուսն էլ՝ ՄԱԿ-ի շենքում, Նյու Յորք), գրաֆիկ. գործեր: Խաղաղության միջազգ. մրց. (1950):

ՊՈՐՏԼԵՆԴ (Portland), ք., ԱՄՆ Օրեգոն նահց-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 573,5 հզ. (ագլոմերացիայում՝ 2,7 մլն, 2010): Տրանսպորտ. հագույց է: Նվինգստ՝ Կոլումբիա գետում Ուիլամետի թափվելու տեղում: Ունի օդանավակայան: Էլեկտրոն. արդ-յան կարևորագույն կենտրոն է: Պ-ում են խոշոր ընկ-ների և ֆին. հաստատությունների գլխամաս. գրասենյակների մասնաճյուղերն ու կենտրոնատեղիները: Ունի 2 համալսարան, թանգարան: Պ-ում անցկացվում է վարդերի ամենամյա փառատոն:

ՊՈՐՏՆՈՎԱ Ջինա (Ջինաիդա Մարտինովնա, 1926–1944), պարտիզանուհի: ԽՄ հերոս (1958, հետմահու): «Պատանի վրիժառուներ» պարտիզան. ջոկատի (Վիտերսկի մարզ) հետախույզ՝ ՀՄՊ-ի ժամանակ: Տանջամահ են արել ֆաշիստները:

ՊՈՐՏՈ ՆՈՎՈ (Porto Novo), *Բենինի* պայտոն. մայրաքաղաքը (1960–ից): Բն.՝ 259 հզ. (2010): Նվինգստ՝ Գվինեայի ծոցում: Կան սննդի արդ-յան ձեռն-ներ, զարգացած է ձկնաբուծությունը: Հայտնի է XVII դ–ից:

ՊՈՐՏՈՎԻԽՈ (Portovisjo), ք. Էկվադորում, Մանաբի պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 199,2 հզ. (2010): Բանջարեղենի և պտղի առևտրի ու վերամշակման կենտրոն է:

ՊՈՐՏՍՄՈՒԹ (Portsmouth), ք–նվինգստ Անգլիայում՝ Լա Մանշ նեղուցի մոտ: Բն.՝ 203,6 հզ. (Պորտսմուտ–Սուտենպտոն ագլոմերացիայում՝ 1,24 մլն, 2010): Զարգացած է էլեկտրոն. արդ-յունը: Ռազմածով. հենակետ է: Հիմնադրվել է XII դ–ի վերջին:

ՊՈՐՏՍՄՈՒԹԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 1905, կնքվել է օգոստ. 23(սեպտ. 5)-ին Պորտսմուտում (ԱՄՆ, Նյու Հեմփշիր նահց)՝ Ռուսաստանի և Ճապոնիայի միջև Ռուս-ճապոն. պատերազմից (1904–05) հետո: Ռուսաստանը Կորեան ճանաչել է Ճապոնիայի ազդեցության ոլորտ, զիջել է Հվ. Սախալինը, Լյաոդունի թ–կղզու (Պորտ Արթուրով և Դալնիով) վարձակալ. իրավունքները: Կողմերը պարտավորվել են զորքերը միաժամանակ դուրս բերել Մանջուրիայից: Ուժը կորցրել է ԵՀՊ-ում Ճապոնիայի ջախջախումից հետո:

ՊՈՐՏՎԵՅՆ [գերմ.՝ Portwein, Պորտուգալիայի *Պորտու* (Porto) ք–ի անունից) և գերմ.՝ Wein – գինի], թունդ գինու տեսակ, ստանում են խաղողի հատուկ սորտերից՝ եռացող քաղցուի վրա էթիլ սպիրտ ավելացնելով, ապա հասունացնելով ոչ մեծ տարողության ոչ լիքը տակառներում:

ՊՈՐՏՈՒ (Oպորտո, Pôrto, Oporto), ք. Պորտուգալիայի հս–արմ–ում՝ Դորու գետի ափին: Բն.՝ 234 հզ. (արվարձաններով՝ 1,3 մլն և ավելի, 2010): Նվինգստ՝ Ատլանտ. օվկ–ի ափին: Ունի օդանավակայան, Սոարիշ Դուշ Ռեյշ ազգ. թանգարան: Հիմնադրել են հռոմեացիները մ. թ. ա. I դ–ում: Պատմաճարտ. հուշարձաններից են՝ տաճարը (XII դ., վերակառուցվել է XVII–XVIII դդ–ում), ռոման. Սան Մարտինուդի Սիդուֆեյտա եկեղեցին (հայտնի է XII դ–ից), Սան Ֆրանսիշկու գոթ. եկեղեցին (հիմն.՝ XIII դ.) ևն: Պատմ. կենտրոնը Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՊՈՐՏՈՒ ԱԼԵԳՐԻ (Pôrto Alegre), ք. Բրազիլիայի հվ–ում, Ռիու Գրանդի դու Սուլ նահց-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,43 մլն (ագլոմերացիայում՝ մոտ 4,1 մլն, 2010): Նվինգստ՝ Ատլանտ. օվկ–ի ափին: Ունի օդանավակայան: Երկրի խոշոր տնտ. կենտրոնն է հվ–ում: Հիմնադրվել է 1742–ին:

ՊՈՐՏՈՒԳԱԼԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, 1. **1820**, Պորտուի և Լիսաբոնի ապստամբություններից հետո իշխանությունն անցել է ժամանակավոր խունտային: Ստեղծվել են կորտեսներ, որոնք 1821–ի հունվ–ին ընդունել են սահմանադրություն՝ *Կադիսի սահմանադրության* (1812) օրինակով: 1823–ին հեղ. ուժերը պարտվել են, մայիսի 30–ին կորտեսներն ինքնաարձակվել են:

2. **1910**, տապալվել է միապետությունը, և հաստատվել հանրապետություն: Սկսվել է հոկտ–ին՝ Լիսաբոնի ապստամբությամբ և ժամանակավոր կառ–յան ստեղծումով: 1911–ի օգոստ–ին Սահմանադիր ժողովն ընդունել է հանրապետ. սահմանադրություն:

ՊՈՐՏՈՒԳԱԼԱՑԻՆԵՐ (ինքնանվանումը՝ portugeses), ժողդ, Պորտուգալիայի հիմն. բնակչությունը (10,3 մլն, 2007): Ապրում են նաև Բրազիլիայում (1 մլն), ԱՄՆ–ում (0,9 մլն), Ֆրանսիայում (0,8 մլն) ևն: Լեզուն՝ պորտուգ.: Հավատացյալները կաթոլիկ են:

ՊՈՐՏՈՒԳԱԼԵՐԵՆ, *պորտուգալացիների* և *բրազիլացիների* լեզուն, Պորտուգալիայի և Բրազիլիայի պետ. լեզուն: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի ռոման. ճյուղին: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ (Portugal), **Պորտուգալիայի Հանրապետություն** (República Portuguesa), պետություն Եվրոպայի հվ–արմ–ում՝ Պիրենեյան թ–կղզում, Ատլանտ. օվկ–ի Ազորյան կղզեխմբում և Մադեյրա կղզում: Սահմանակից է Իսպանիային: Տարածքը՝ 92,1 հզ. *կմ*^{2}, բն.՝ 10,8 մլն (2013): Մայրաքաղաքը՝ *Լիսաբոն*: Պետ. լեզուն՝ պորտուգ.: Կառավարման ձևը՝ խառը հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ Ասամբլեան: Բաժանված է 18 վարչ. օկրուգների և 2 ԻՄ–ի: Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է: Անդամակցում է ՆԱՏՕ–ին (1949), ԵՄ–ին, ԵԽ–ին, ԵԱՀԿ–ին, Առտ ՀԿ–ին ևն: Եվրոպայի միջին զարգացածության երկրներից է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 21,8 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է մեքենաներ, հագուստ, կոշիկ, մետաղներ, քիմիկատներ, թուղթ, ծխախոտ, գինի, ձիթայուղ, միրգ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ, դեղորայք ևն: Դրամ. միավորը՝ եվրո:

Մ. թ. ա. IV–III դդ–ում Պ–ի տարածքում բնակություն են հաստատել լուզիտանները: Մ. թ. ա. I դ–ի վերջին Հռոմին հաջողվել է Պ–ի տարածքը դարձնել հռոմ. պրովինցիա: Մ. թ. V–VI դդ–ում նվաճել են սվևներն ու վեստգոթերը, 713–718–ին՝ արաբները: Ռեկոնկիստայի ընթացքում 1095–ին ստեղծվել է Պ–ի կոմսությունը, 1139–ին (պաշտոնապես՝ 1143–ին) հռչակվել է անկախ թագավորություն: 1581–1640–ին եղել է Իսպանիայի տիրապետության տակ: Իսպ. ժառանգության (1701–14) համար պատերազմի մեջ ներքաշվելով Անգլիայի և Հոլանդիայի կողմում՝ Պ. կախման մեջ է ընկել Անգլիայից (1703–ի Լիսաբոնի և Մետուենի պայմանագրեր): Նապոլեոնի պատերազմի ժամանակ, 1807–ին, Պ. նվաճել են ֆրանս. զորքերը: 1808–ին Բրիտ. զորքերը պորտուգ. հայրենասերների օգնությամբ երկիրն ազատագրել են Նապոլեոնի զորքերից: 1910–ին Պ. դարձել է հանրապետություն: 1926–ին պետ. հեղաշրջմամբ հաստատվել է զինվ. բռնիշխանություն: 1932–ին իշխանությունը զավթել է Սալազարը՝ երկրում հաստատելով ֆաշիստ. կարգեր: 1974–ին ապստամբ զորքերը ՋՈՒ օժանդակությամբ տապալել են ֆաշիստ. կառ–յունը, թույլատրվել է քաղ. կուս–յունների գործունեությունը: Ավարտվել է Աֆրիկայում պորտուգ. նախկին գաղութների ապազաղութացումը: 1976–ի ապրիլին ընդունվել է նոր սահմանադրություն: 1990–ին երկրում ավարտվել է ժամանակակից ժողովրդավար. քաղ. համակարգի ձևավորումը:

ՊՈՐՈՒՄԲԵՍԿՈՒ (Porumbescu) Չիպրիան (1853–1883), ռումին կոմպոզիտոր, դիրիժոր: Հեղինակ է «Թենկնաձու Լինտեն» (1877) կատակերգության, «Նորալուսին» (1882) օպերետի, ջութակի և դաշնամուրի բալլադի (1880), երգերի («Երեք ծաղիկ», 1977–ից՝ Ռումինիայի Պետ. օրհներգը, ևն) և այլ գործերի:

ՊՈՐՓՅՈՒՐ Փյունիկեցի (Porphyrius Tyrius, Մալխո, 232/233–304/306), հույն փիլ. և տրամաբան: Նորպլատոնականության ականավոր ներկայացուցիչ: Փիլ. աշխ-ների մեծ մասը վերաբերում է Պլատոնի տրամախոսությունների, Արիստոտելի տրամաբ. գրվածքների մեկնաբանություններին և իր ուսուցիչ Պլոտինի հայացքների վերաշարադրմանը: Հեթանոսության դիրքերից քննադատել է քրիստոնեությունը, գրել «Ընդդեմ քրիստոնյաների» (գիրք 1–15) աշխ-ը, որը 488–ին այրել են: Միջնադարում տարածված ընդհ. հասկացությունների բաժանման աղյուսակը կոչվել է «Պորփյուրի ծառ»: Հեղինակավոր տրամաբ. ձեռնարկներից էր նաև Պ–ի «Ներածութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի» գրվածքը (հայ. հրտ.՝ 1833, հայտնի է «Ներածություն» վերնագրով), որը թարգմանվել է լատ–ի, ասոր–ի, նաև հայ–ի (480–490, մեծապես նպաստել է հայ տրամաբ. մտքի զարգացմանը): Առաջինը

մեկնել է *Դավիթ Անհաղթը*: Մեկնություններով հանդես են եկել նաև *Վահրամ Րաբունին*, *Հովհաննես Որոտնեցին*, *Գրիգոր Տաթևացին* և այլ մտածողներ:

ՊՈՐՖԻՐ, 1. կարմիր ջրիմուռների ցեղ: Թերթավոր թալոմի բարձր.՝ 1 *մ*: Հայտնի է 25 տեսակ՝ բարեխառն գոտու ծովերում: Մի շարք տեսակներ ուտելի են: Ճապոնիայում և Չինաստանում աճեցնում են: 2. Հրաբխածին երակ. ապար, կազմված է մանրահատիկ կամ ապակենման նյութում ներփակված բյուրեղներից: Ապարի նման կառուցվածքը կոչվում է պորֆիրային կառուցվածք:

ՊՈՐՖԻՐԻՆԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, գունակային փոխանակության ժառանգ. խանգարում՝ արյան մեջ և հյուսվածքներում *պորֆիրինի* պարունակության ավելացմամբ: Դրսևորվում է լուսամաշկախտով, արյունատարրալուծ. կրիզներով ստամոքսաղիք. և նյարդահոգեկան խանգարումներով:

ՊՈՐՖԻՐԻՆՆԵՐ, գունանյութեր, մտնում են հեմոգլոբինի, միոգլոբինի, ցիտոքրոմների, քրոմոսոմների ու վիտամինների բաղադրության մեջ և մասնակցում կարևորագույն կենսբ. շարժընթացների: Պ–ի փոխանակության խանգարումները մարդու օրգանիզմում հանգեցնում են *պորֆիրինային հիվանդության*:

ՊՁԱՔՃՅԱՆ Մովսես Կարապետի (1940–2016), գրող, թարգմանիչ: 1976–ից՝ Փարիզում: Հեղինակ է «Կեռասի ժամանակէն վերջ եւ առաջ» (1983) պատմվածքների, «Մինչեւ վերջինը արևներուն» (2001) բանաստեղծությունների, «Լուացք փռուած տանիքի վրայ» (1987), «Անկատար վերծանումներ» (1997) հրապարակախոս. ակնարկների ժող–ների, «Օիծեռնակները պիտի չսարսափին խրտուիլակներէն» (1990, ԹՄՄ «Հայկաշեն Ուզունյան» գր. մրց.), «Լուսաւոր աչքերով օտարականը (1993), «Անցողիկը եւ անժամանցելին» (հ. 1–2, 2005) վեպերի, «Վարագույրը իջնելէն առաջ», նաև օրագրությունների:

ՀՀ «Մովսես Խորենացի» (2009), Համազգ. մշակութ. միության «Ոսկե Մեսրոպ Մաշտոց» ոսկե (2010), ՀԳՄ «Գրական վաստակի համար» (2010) մեդալներ:

ՊՈՌՇ, Պռոշ–Հասան, իշխան *Խաղբակյանների* իշխան. տոհմից: Վասակի կրտսեր որդին: 1228–ին պարտության է մատնել Ջալալ Էդ–Դինի խորեզմյան հրոսակներին և ազատագրել Դվինը: Հովանավորել է Գեղարդի վանքի վիմափոր տաճարների ու *Թանահատ վանքի* կառուցումը:

ՊՈՌՇՅԱՆ Պերճ (Տեր–Առաքելյան Հովհաննես Ստեփանի, 1837–1907), գրող: Պռոշ *Պռոշյանի* հայրը: Հեղինակ է «Սօս եւ Վարդիթեր» (1860), «Հացի խնդիր» (1879), «Շահէն» (1883), «Յեցեր» (1889), «Բղդէ» (1890), «Հունոն» (1901) և այլ վեպերի, «Գիւղական խանութպան» (1889), «Բուլի–բուլի» (1893), «Օրը կիրակի է, երազը սուտ» (1903) և այլ պատմվածքների, որտեղ նկարագրել է կերպափոխվող հայ գյուղը, պետ. պաշտոնյաների կամայականությունները, գյուղացու ընդվզումն ու բողոքը, նաև «Յուշիկներ» (1894) հուշագրության: Պ. կատարելագործել է հայ ռեալիստ. արձակի տիպականացման արվ–ը:

ՊՈՌՇՅԱՆ Պռոշ Պերճի (1883–1918), քաղ. գործիչ: Պերճ *Պռոշյանի* որդին: Էսէռների կուս–յան անդամ, հետագայում՝ ձախ էսէռ. կուս–յան կազմակերպիչներից և ԿԿ անդամ: Ընտրվել է Համառուս. ԿԳԿ անդամ (1917–ի հոկտ.): Որպես Բրեստի հաշտության հակառակորդ՝ 1918–ի մարտին ձախ էսէռների հետ դուրս է եկել ԺԿԻԽ–ից: Եղել է ձախ էսէռ. խռովության ղեկ–ներից, որի ճնշումից հետո անցել է ընդհատակ: Մահացել է տիֆից:

«ՊՈՈՇՅԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ, ալկոհոլ. խմիչքների արտադր–յան ձեռն. ՀՀ–ում: Հիմնադրվել է 1987–ին: Արտադրում է գինու, լիկյորի, կոնյակի, շամպայնի, օղու տարբեր տեսակներ, կոնյակի, ցորենի, խաղողի սպիրտ: Մասնավորեցվել է 1996–ին: Կենտրոնատեղին՝ Երևանում:

ՊՈՈՇՅԱՆԻ ՏՈՒՆ–ԹԱՆԳԱՐԱՆ, հիմնադրվել է 1948–ին Աշտարակում՝ Պ. Պռոշյանի ծնված տանը: Ներկայացված են գրողի կյանքին ու գր–հաս. գործունեությանը վերաբերող նյութեր, իրեր, գեղանկարներ ևն, սրահներից մեկը կահավորված է նրա կյանքի վերջին տարիների՝ Թիֆլիսի բնակարանի իրերով:

«ՊՍԱԿ», գր., քաղ., պատմ. և մանկավարժ. շաբաթաթերթ (1880–84, Երևան): Տեղի անդրանիկ պարբ–ը: Խմբ–հրտ.՝ Վասակ *Պապաջանյան*:

ՊՍԱԿԱԳԾԵՐ, **արևապսակի գծեր**, *արևապսակում* առաջացող բազմակի իոնացված որոշ տարրերի (Fe, Ni, Ca, Al ևն) սպեկտրում արգելված գծեր, ցույց են տալիս պսակի բարձր ջերմաստիճանը (մոտ 1,5 մլն K):

ՊՍԱԿԱԿԻՔ ԱՂԱՎՆԻՆԵՐ, աղավնիների ընտանիքի թռչունների սեռ: Ժամանակակից աղավնիներից ամենախոշորներն են (երկ.՝ մինչև 89 *սմ*): Հայտնի է 3 տեսակ՝ Նոր Գվինեայի և հարակից կղզիների անտառներում:

ՊՍԱԿԱԿԻՔ ԿՈՒՆԿՆԿ, կոունկանմանների կարգի թռչուն: Գլխին ունի ոսկեդեղնավուն փետուրների փունջ: Երկ.՝ մինչև 1 *մ*: Ապրում է Աֆրիկայում՝ գետերի և լճերի ափերին: Վարում է նստակյաց կամ կիսանստակյաց ապրելակերպ: Կազմում է մեծ երամներ: Մսվում է հիմնականում մանր երկկենցաղներով, խխունջներով, միջատներով, նաև սերմերով ևն: Զբոսայգիներում խնամվում է որպես գեղազարդիչ թռչուն:

ՊՍԱԿԱՉԵՎ ՊԱՐՊՈՒՄ, պարպում գազերում, սովորաբար՝ մթնոլորտայինից ոչ ցածր ճնշման դեպքում, երբ էլեկտրոդների միջև էլ. դաշտն անհամասեռ է: Գազի իոնացումն ու լուսարձակումը տեղի են ունենում միայն էլեկտրոդներին մերձ սահմանափակ տարածքում (պսակավորող շերտ): Կարող է առաջանալ էլեկտրահաղորդման բարձրավոլտ գծերի հաղորդալարերի միջև, ինչը հանգեցնում է էներգիայի զգալի կորուստների:

ՊՍԱԿԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, պսակային շրջանառության անատոմաֆիզիոլոգ. խանգարումներ, որոնք հանգեցնում են սրտամկանի թթվածնաքաղցի և *սրտի իշեմիկ հիվանդության*:

ՊՍԱԿԱՅԻՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ, սրտամկանի արյան շրջանառությունն իրականանում է սրտի պսակային աջ և ձախ զարկերակների ու նրանց հետ հաղորդակցվող երակների միջոցով: Պ. շ–յան վրա ազդում են ֆիզ. և հոգեկան վիճակները, օրգանիզմի ծանրաբեռնվածության բնույթը: Պ. շ–յան խանգարումները և անբավարարությունը մահվան հաճախակի պատճառներից են:

ՊՍԱՄՏԻԿՈՍ I, Եգիպտոսի փարավոն՝ մ. թ. ա. 663–610–ին: Հիմնադրել է XXVI (Սաիսյան) հարստությունը: Իր իշխանության տակ է միավորել Եգիպտոսը, երկրից վտարել ասորեստանցիներին:

ՊՍԱՄՄՆ (հուն՝ psammos – ավազ), օրգանիզմների համախումբ, որոնք բնակվում են գետերի և լճերի ափերի՝ ջրի մակարդակից բարձր խոնավ ավազներում:

ՊՍԱՄՈՖԻՏՆԵՐ (< հուն. psammos – ավազ և phyton – բույս), **ավազաբույսեր**, շարժուն ավազների վրա գոյատևելուն հարմարված բույսեր: Ծառերը և թփերը (սաքսաուլ, կանդիմ) բների վրա առաջացնում են հավելյալ արմատներ, խոտաբույսերը՝ ստորգետնյա ցողուններ կամ ընդերացողուններ (օր.՝ ավազ. բոշխը): Օգտագործվում են ավազների ամրացման համար:

ՊՍԵՎԴՈ... (հուն.՝ pseudos – կեղծ), բարդ բառերի մաս. նշանակում է կեղծ, «երևակայական» (օր.՝ *պսևդոմիքսիա, պսևդոպոդիաներ*):

ՊՍԵՎԴՈԼՈԳԻԱ, երևակայական պատմություններ (որտեղ իրադարձություններին կենտրոնում սեփ. անձն է) հորինելու հիվանդագին հակում:

ՊՍԵՎԴՈՄԻՔՍԻԱ (< *պսևդո*... և հուն.՝ mixis – միացում), **պսևդոգամիա**, բազիդիավոր և մի շարք պայուսակավոր սնկերի սեռ. շարժընթացի տիպ, երբ միաձուլվում են ըստ սեռի չտարբերակված 2 վեգետատիվ բջիջներ՝ գոյացնելով անսեռ սերունդ՝ սպորոֆիտ:

ՊՍԵՎԴՈՄՈՆԱԴՆԵՐ, բակտերիաներ՝ ուղիղ կամ թեթևակի կորացած ցուպիկների տեսքով և բևեռներում տեղադրված մտրակիկներով: Գրամբացասական են: Առավելապես օդակյաց են: Պ–ի մեջ կան մարդկանց, կենդանիների և բույսերի համար պայման. ախտածիններ և ախտածիններ:

ՊՍԵՎԴՈՊՈԴԻԱՆԵՐ (< *պսևդո*... և հուն.՝ pus, սեռ. հոլ.՝ podos – ոտք), **կեղծ ոտքեր**, միաբջիջ օրգանիզմների (արմատոտանիներ, սպորավորներ) և բազմաբջիջ օրգանիզմների որոշ բջիջների (լեյկոցիտներ, միկրոֆագեր ևն) բջջապլազմ. ժամանակավոր մակաճումներ: Ծառայում են տեղաշարժմանը և կեր ու այլ մասնիկներ բռնելուն:

ՊՍԻԽՐՈՖԻԼՆԵՐ (< հուն. psychros – սառը և ...*ֆիլ*), **կրիոֆիլներ, սառնասերներ**, օրգանիզմներ, որոնք ապրում և բազմանում են համեմատաբար ցածր ջերմաստիճանի (սովորաբար՝ 10°C–ից ոչ բարձր) պայմաններում: Եզրույթը հաճախ օգտագործում են միկրոօրգանիզմների (աճում են առավելապես 5–10°C ջերմաստիճանում) համար:

ՊՍԻԽՐՈՖԻՏՆԵՐ (< հուն. psychrós – սառը, phyton – բույս), **սառնաբույսեր**, խոնավ և ցուրտ պայմաններում կանոնավոր աճող և բազմացող բարձրլեռն. բույսեր: Հարմարված են երկարատև ձմեռ. պայմաններին: Պ. են ջրիմուռները և որոշ ծաղկավորներ:

ՊՍԿՈՎ, ք. ՌԴ–ում, համանուն մարզի վարչ. կենտրոնը՝ Վելիկայա գետի ափին: Բն.՝ 193,0 հզ. (2010): Երկթղ. հանգույց է: Զարգացած են մեքենաշինությունը, պատրաստի մետաղե իրերի արտադրյունը ևն: Ունի մանկավարժ. ինստ., դրամատիկ. թատրոն, պատկերասրահ, ժող. արվ–ի թանգարան ևն: Հիմնադրվել է IV դ–ից ոչ ուշ, հայտնի է 902–ից:

ՊՍԿՈՎԻ ՄԱՐԶ, վում ՌԴ հս–արմ. դաշն. օկրուգում: Տարածքը՝ 55,4 հզ. *կմ*^{2}, բն.՝ 696 հզ. (2010): Ունի 24 շրջան, 14 քաղաք,

14 քտա: Վարչ. կենտրոնը՝ *Պսկով*: Կազմավորվել է 23.08.1944-ին: Գլխ. գետը՝ Վելիկայա, խոշոր լիճը՝ Պսկովյան: Առաջատար են մեքենաշինությունը, սննդի, շինանյութերի արտադր-յունը: Զարգացած է կաթնամսատու տավարաբուծությունը, թռչնաբուծությունը ևն:

ՊՍԿՈՎՅԱՆ ԴԱՏԱՄՍՏԱՆԱԳԻՐՔ, Պսկովի հանրապետության իրավ. նորմերի ժող. (XIV–XV դդ.): Կարգավորել է հող., առևտրաարհեստավոր., առուծախի, գրավի, նվիրատվության, վարձակալ. և այլ իրավահարաբերությունները:

ՊՍԿՈՎՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, կազմվել են XIV–XVII դդ-ում: Ընդգրկում են Պսկովի և մերձբալթյան ժողդ-ների պատմությունները, այլ իրադարձություններ:

ՊՍՈՐՈՊՏՈՋ, կենդանիների ինվազիոն հիվանդություն, ավելի հաճախ վարակվում են ոչխարները, խեչ-ները, ձիերը, ճագարները. հարուցվում է պսորոպտիդ ընտանիքի մաշկ. մակաբույծ որդերով: Ախտանշանները՝ մաշկ. քոր, բրդաթափում, նիհարում:

ՊՍՈՒՐՅԵՎ Նիկոլայ Դեմյանովիչ (1900–1980), խորհրդ. բանակի կապի զորքերի գեն-գնդ. (1945): Սոց. աշխ. հերոս (1975): 1941–48-ին՝ Սրմ. ճակատի զորքերի կապի պետ, Խորհրդ. բանակի կապի զորքերի պետի տեղակալ, 1948–75-ին՝ ԽՍՀՄ կապի նախարար:

ՊՏԵՐԱՆՄԱՆՆԵՐ, բարձրագույն անսերմ բույսերի բաժին: Խոտաբույս են կամ ծառանման ցամաք. և ջր. բույսեր: Տերևների վրա (մեծ մասամբ՝ ստորին կողմում) տեղադրված են սպորոգենների խմբերը՝ սորուսները: Հայտնի է մոտ 12 հզ. ժամանակակից տեսակ (300 ցեղ): Շատերը գեղազարդիչ են, որոշ մասը՝ ուտելի, դեղաբույս: Կան թունավոր տեսակներ:

ՊՏԵՐԻԼԻԱՆԵՐ (< հուն. pteron – փետուր և hyle – անտառ), թռչունների մաշկի փետրածածկ հատվածները: Պ-ի դասավորությունը կարգաբան. հատկանիշ է: Տես նաև *Ապտերներ*:

ՊՏԵՐՆԵՐ (Pterophyta), բարձրակարգ սպորավոր բույսերի բաժին. միջանկյալ տեղ են գրավում ռինիոֆիտների և մերկասերմերի միջև: Ռինիոֆիտներից տարբերվում են գլխավորապես արմատների ու տերևների առկայությամբ, իսկ մերկասերմերից՝ սերմերի բացակայությամբ: Առաջացել են ռինիոֆիտներից՝ պալեոզոյի դարաշրջանում:

ՊՏԵՐՈԴԱԿՏԻԼԻԱՆԵՐ, թռչող մողեսների կարգի անհետացած սողունների ենթակարգ: Ապրել են յուրայից–կավճի դարաշրջաններում՝ Եվրոպայում, Արլ. Աֆրիկայում և Ամերիկայում:

ՊՏԿԱՁԵՎ ԵԼՈՒՏԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ, **մաստոիդիտ** (հուն.՝ mastoides – պտկաձև), քունքոսկրի պտկաձև ելուստի բորբոքում. հիմնականում միջին ականջի թարախ. բորբոքման հետևանք է:

ՊՏԿԵՄԲԵՐՔ, **Պտկի Սուրբ Գևորգ եկեղեցի**, ճարտ. հուշարձան Լ.Ղ.Հ Ակերանի շրջանի Ուլուբաբ գ-ի մերձակայքում: Եկեղեցին (XIII դ.) 1 զույգ քառակուսի մույթերով գմբեթավոր հորինվածք է՝ արլ. 2 ավանդատնով:

ՊՏԿԻԿԱՅԻՆ ԳԾԵՐ, ուռուցիկ գծեր՝ մարդկանց, կապիկների և այլ կաթնասունների ափերի և ներբանների մաշկի մակերևույթին:

ՊՏՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **պոմոլոգիա** (< լատ. pomum – պտուղ և ...*լոգիա*), գիտություն պտուղների և հատապտուղների մասին: Զբաղվում է սորտերի արտադրականսբ. ուսումնասիրության և շրջանացման հարցերով, մշակում սորտերի դասակարգումը:

ՊՏՂԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ (կենսբ.), բազմանալու հատկությունը: Կենսբ-յան և ժողովրդագրության մեջ օրգանիզմի կամ պոպուլացիայի հնարավոր վերարտադրյան ունակությունն է, որը որոշվում է բույսերի գամետների (ձվերի) սերմերի կամ ընձյուղների թվով: Պ. փոխվում է տարիքի հետ կապված, օրինաչափորեն տատանվում է ըստ սեզոնների և տարիների՝ կախված սննդառության, պոպուլացիայի խտության, կլիմ. և այլ պայմաններից: Պ-յան հարցերն ուսումնասիրում է պոպուլացիոն էկոլոգիան:

ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ, 1. պտղատու մշակաբույսերի աճեցում՝ պտուղներ ստանալու համար, բուսաբուծության ճյուղ: Ուղղություններն են՝ հատուկ (իրեն բնորոշող) Պ. (խնձորենուց, տանձենուց, ծիրանենուց, դեղձենուց են ստացվող պտուղների), հատապտղաբուծություն, ջերմատն. են Պ.: 2. Գիտ-յուն, որն ուսումնասիրում է պտղատու մշակաբույսերի կենսբ-յունը, նրանց մշակությունը, տնկականութի և Պ-յան արտադրանքի մշակության ինտենսիվ տեխնոլոգիանեը: ՀՀ-ում Պ-յան գիտ. հարցերով զբաղվում են Խաղողապտղագինեգործ. գիտ. կենտրոնում, ՀԱԱՀ-ում:

ՊՏՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, **կարպոլոգիա** (< հուն. karpos – պտուղ և ...*լոգիա*), բույսերի ձևաբանության բաժին. ուսումնասիրում է պտուղների ու սերմերի ձևը, կառուցվածքն ու դասակարգումը:

ՊՏՂԱԿԵՐՆԵՐ (Laspeyresiini), տերևոլորների ընտանիքի թիթեռներ: Թևերի բացվածքը՝ 8–24 *մմ*: Թրթուրներն ապրում են պտուղների, սերմերի, արմատների մեջ: Պտղատու բույսերի վնասատուներ են: ՀՀ-ում հայտնի է 4 տեսակ՝ խնձորենու, տանձենու, սալորենու և արլ.՝ գրեթե բոլոր մարզերում:

ՊՏՂԱՃՄԱՆՃԵՐ (Drosoptihidae), երկթանանի միջատների ընտանիք: Առավել հայտնի է դրոզոֆիլների սեռը, որոնք մանր միջատներ են, մարմնի երկ.՝ մինչև 3,5 *մմ*: Ունեն կարմիր աչքեր: Որոշ տեսակներ, հատկապես՝ սովոր. Պ, գենետիկ. հետազոտությունների անփոխարինելի օբյեկտ են (հեշտությամբ բազմանում են, պտղաբերությունը բարձր է, փոփոխականությունը՝ մեծ):

ՊՏՂԱՉՈՒՖՈՒԹՅՈՒՆ, **ֆետոմետրիա** (< լատ. fetus – սերունդ և ...*մետրիա*), պտղի և նրա առանձին մասերի չափերի որոշումը ռենտգենագրության, անդրաձայն. ախտորոշման և այլ մեթոդներով:

ՊՏՂԱՊԱՏՅԱՆ, **պերիկարպիում**, բույսի պտղի սերմը պաշտպանող պատր: Սովորաբար ձևավորվում է սերմնարանի պատից: Կազմված է 3 (երբեմն՝ 2) շերտից՝ արտաքին (էկզոկարպիում), ներքին (էնդոկարպիում) և միջին (մեզոկարպիում): Պ. բույսի կարգաբան. հատկանիշ է:

ՊՏՂԱՄՈՐՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, **պոմոլոգիա** (< լատ. pomum – պտուղ և ...*լոգիա*), գիտ. գիտ-յուն. զբաղվում է պտղատու և հատապտղատու բույսերի սորտերի ուսումնասիրությամբ՝ լավագույններն ընտրելու, աճեցնելու, այգիների սորտային կազմը և առանձին սորտեր բարելավելու ու դրանք արդյունավետ օգտագործելու նպատակով:

ՊՏՂԱՎԻԺՈՒՄ, **պտղաթափ**, պտուղների թափման երևույթը: Հիմն. պատճառներն են ծաղկի կառուցվածքի թերությունները, փոշոտման և բեղմնավորման վրա ազդող արտաքին ու ներքին անբարենպաստ պայմանները: Պ. կանխելու համար ծառերի ծաղկումից առաջ պետք է կատարել այգիների ազոտային սնուցում, կարգավորել հողի ջր. ռեժիմը ևն:

ՊՏՂԱՏՎՈՒԹՅՈՒՆ, կենդանիների էգերի սեռ. արդյունավետությունը: Կաթնասունների Պ. տատանվում է 1–2 ձագից (հաճախ՝ ոչ ամեն տարի) մինչև 10–15 (սովորաբար՝ տարին մի քանի անգամ): Որոշ միջատներ դնում են մինչև մի քանի հարյուր հազար ձու, լսնաձուկը՝ մինչև 300 մլն ձկնկիթ: Գեղտ. կենդանիների Պ-յան բարձրացումը անասնաբուծության հիմն. խնդիրներից է:

ՊՏՂԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐ, մշակովի բույսերի խումբ. աճեցնում են հիմնականում պտուղ, հատապտուղ, ընկույզ ստանալու համար: Հայտնի է 32 ընտանիքի մոտ 200 տեսակ: Բաժանվում են հունդավոր, կորիզավոր, ընկուզապտղավոր, հատապտղավոր, ցիտրուսներ, արևադարձ. և մերձարևադարձ. մշակաբույսեր, խաղողի վազ տիպերի:

ՊՏՂՆԱՎԱՆՔ, VI դ-ի վերջ–VII դ-ի սկզբի ճարտ. հուշարձան ՀՀ Կոտայքի մարզի Պտղնի գ-ում: Կառուցել է իշխան Սմբատ Ամատունին: 2 զույգ որմնամույթերով գմբեթավոր դահլիճ է: Պահպանվել են հս. պատը, հվ. պատի արլ. հատվածը և արլ. գմբեթակիր կամարը: Ունի բարձրարվ. հարդարանք:

ՊՏՂՈՄԵՈՍ ԿԼԱՎԴԻՈՍ (մոտ 90–մոտ160), հույն գիտնական, մշակել է անշարժ երկրազնդի շուրջ մոլորակների շարժման մաթ. տեսություն, որը հնարավորություն է տվել նախահաշվարկել նրանց դիրքը երկնակամարում: *Արեգակի* և *Լուսնի* շարժման տեսության հետ կապված է աշխարհի կառուցվածքի պտղոմեոսյան համակարգը, որը շարադրել է իր հիմն.՝ «Ալմագեստ» աշխ-յան մեջ: Պ. Կ-ի «Աշխարհագրություն» աշխ-ից օգտվել է *Անանիա Շիրակացին*:

ՊՏՂՈՄԵՈՍԻ ԹԵՈՐԵՄ, շրջանագծին ներգծված ցանկացած ուռուցիկ քառանկյան անկյունագծերի երկ-յան արտադրյալը հավասար է նրա հակադիր կողմերի արտադրյալների գումարին: Կոչվել է *Պտղոմեոս Կլավդիոսի* անունով, որն այն օգտագործել է եռանկյունաչափ. առանձին առնչություններ արտածելու համար:

ՊՏՂՈՄԵՈՍՆԵՐ, **Պտղոմեյաններ, Լագյաններ**, թագավոր. հարստություն հելլենիստ. Եգիպտոսում՝ մ. թ. ա. 305–330-ին: Հիմնադրել է Ալեքսանդր Մակեդոնացու զորավար Պտղոմեոս I Սոտերը (Լագոսի որդին), որը տերությունը *դիադոքոսների* միջև բաժանելիս ստացել է (323) Եգիպտոսը: Հարստության վերջին ներկայացուցիչ Կլեոպատրա VII-ի (մոտ 51–30) օրոք Պ-ի թագավորությունը նվաճել է Հռոմը և դարձրել կայսեր. պրովինցիա՝ Եգիպտոս անվանումով:

ՊՏՅԱԿ, **ռիտոն** (հուն.՝ rhyton – եղջյուր), եղջյուրի տեսքով, ներքևի նեղ վերջույթում ոչ մեծ անցքով խմելու (սովորաբար՝ գինի) անոթ (մետաղից, կավից, եղջյուրից)՝ փորագրված և զարդաքանդակված: Հայաստանում (Արտաշատ, Էրեբունի և այլուր) հայտնաբերվել են տեղ. և ներկրված բազմաթիվ Պ-ներ:

ՊՏՈՋ (հուն.՝ ptosis – իջեցում), 1. վերին կոպի իջեցումը՝ այն բարձրացնող մկանների լուծանքի հետևանքով: 2. Օրգանի անվան հետ՝ նշանակում է տվյալ օրգանի իջեցում (օր.՝ նեֆրոպտոզ՝ երիկամի իջեցում):

ՊՏՏԱԽՏ, ցենուրոզ, կճղակավորների (գերազանցապես՝ ոչխարների), որոշ կրծողների, հազվադեպ՝ նաև մարդկանց ճիճվային հիվանդություն, որին բնորոշ է տարբեր հյուսվածքներում երիզորդի թրթուրների՝ ցենուրների զարգացումը: Առավել վտանգավոր է Պ–ի ուղեղ. ձևը, որի ժամանակ կենդանիները կատարում են շրջանաձև շարժումներ, գլուխը հետ են գցում կամ հակում, նկատվում են ջղաձգություններ, տեսողության կորուստ:

ՊՏՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ պինդ մարմնի, 1. շարժում առանցքի շուրջ, երբ մարմնի՝ պտտման առանցքի վրա գտնվող կետերն անշարժ են, իսկ մնացած բոլոր կետերը շրջանագծեր են գծում այդ առանցքի շուրջ: 2. Մարմնի շարժում կետի շուրջ, երբ նրա մեկ O կետն անշարժ է, իսկ մնացած բոլոր կետերը շարժվում են O կենտրոնով գնդաձև մակերևույթներով:

ՊՏՏԱՀՈՂՄ, մթն. *մրրիկ*: Առաջանում է ամպրոպ. ամպերում և սև թևքի կամ կնճիթի ձևով իջնում՝ ներքև՝ հաճախ մինչև երկրի մակերևույթ: Բարձր.՝ 800–1500 *մ*: Պարուրաձև վերև է ձգում փոշի և ջուր: Օդի պտտման արագությունը *վ*–ում մի քանի տասնյակ մետր է: Տրամագիծը չափվում է տասնյակ (ցամաքի) և հարյուրավոր (ծովերի վրա) մետրերով: Պ. անցնում է 40–60 *կմ*, ուղեկցվում է ամպրոպով, անձրևով և կարկուտով: Կարող է մեծ ավերածություններ պատճառել: ԱՄՆ–ում կոչվում է տոռնադո:

ՊՏՏԵՉՔ (ավիացիա), ինքնաթիռի կամ սավառնակի անկումը կտրուկ պտուտակաձև հետագծով (պտույտները կատարվում են բոլոր 3 առանցքների շուրջ): Ուղեկցվում է կառավարման լրիվ կամ մասնակի կորստով: Երբեմն իրականացվում է որպես բարձրագույն պիլոտաժի տարր:

ՊՏՏՄԱՆ ՍԻԴԵՐԻԿ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ (լատ.՝ sidus, սեռ. հոլ.՝ sideris – աստղ), ժամանակահատված, որի ընթացքում Արեգակն. համակարգի որևէ մարմին (մոլորակ, երկնաքար, գիսավոր) մեկ լրիվ պտույտ է կատարում Արեգակի կամ այլ կենտր. մարմնի (մոլորակները՝ արբանյակների համար) շուրջ:

ՊՏՏՈՂ ՄՈՄԵՆՏ, $M_{պտ.}$, հավասար է մարմնի վրա պտտման առանցքի նկատմամբ ազդող բոլոր մոմենտների հանրահաշվ. գումարին: Մարմնի անկյուն. արագացման (ε) հետ կապված է $M_{պտ.} = Iε$ հավասարումով, որտեղ I–ն *իներցիայի մոմենտն* է պտտման առանցքի նկատմամբ: Տես նաև *Ուժի մոմենտ*:

ՊՏՏՎՈՂ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՏ, մագնիս. դաշտ, որի մագնիս. ինդուկցիայի վեկտորը տարածության մեջ պտտվում է հաստատուն հաճախականությամբ: Առաջանում է տարածականորեն շեղված փուլերով 2 և ավելի փոփոխ. մագնիս. դաշտերի վերադրման դեպքում: Կիրառվում է փոփոխ. հոսանքի մեքենաներում, չափիչ սարքերում ևն:

ՊՏՈՒԿՅԱՆ Զարեհ (1911–2001), դրամագետ, քիմիկոս: Հեղինակ է «Կիլիկեան Հայաստանի դրամները» (1963), «Արտաշէսեան հարստութեան դրամները» (1969), «Հայաստանի վերաբերեալ հոռմէական դրամներ եւ մեդալիոններ» (1971, բոլորը՝ Վնն.) և այլ աշխ–ների:


ՊՏՈՒՂ, 1. (բուսաբ.) ծածկասերմ բույսերի օրգան. առաջանում է ծաղկից ու ծառայում որպես սերմերի ձևավորման տեղ և պաշտպանման ու տարածման միջոց: Ձևավորվում է բեղմնավորումից հետո (բացի պարթենոկարպ Պ–ից): Տարբերում են Պ–ի հետևյալ ձևերը՝ հատիկ, պատիճ, ունդ, տուփիկ, ընկույզ, կորիզապտուղ, հատապտուղ, արմատապտուղ, պտղաբանջար ևն: 2. (Սաղմնաբան.) մարդը կամ կաթնասուն կենդանին սաղմն. զարգացման շրջանում՝ հիմն. օրգանների ու համակարգերի ձևավորումից հետո: Մարդու համար այդ շրջանն ընդգրկում է հղիության 3–րդ շաբաթից մինչև ծնվելու պահը:

ՊՏՈՒՉԿՈ Ալեքսանդր Լուկիչ (1900–1973), ռուս. կինոռեժ., նկարիչ: ԽՍՀՄ ժող. արտիստ (1969): Ռուս. ծավալ. մուլտֆիլմի սկզբնավորողներից («Նոր Գուլիվեր», 1935, «Ոսկե բանալի», 1939, ևն): Էկրանավորել է հեքիաթներ, լեգենդներ, բիլիևնաներ («Քարե ծաղիկը», 1946, «Ռուսլան և Լյուդմիլա», 1973, ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1947):

ՊՏՈՒՏԱԿ, 1. ամրացման տարր, գլխիկով (սովորաբար՝ *պտուտակգրիչի* փորակով) և *պարուրակով* ձող: 2. **Ընթացային Պ.**՝ պտուտակային փոխանցման տանող օղակը:


ՊՏՈՒՏԱԿ ՕԴԱՅԻՆ, պրոպելեր, թիակավոր պտուտակ, գործարկվող շարժիչով թիակավոր ագրեգատ, որը նախատեսված է շարժիչի հզորությունը (պտտող մոմենտը) քարշի փոխակերպելու համար: Օգտագործվում է որպես ուղղաթիռների, ինքնաթիռների շարժասարք:

ՊՏՈՒՏԱԿԱԳԻԾ, տարած. պարուրաձև կորագիծ 00′ առանցքով կլոր գլանի (նկ. ա) կամ կլոր կոնի (նկ. բ) մակերևույթին, որը բոլոր ծնիչները հատում է նույն անկյան տակ:



ՊՏՈՒՏԱԿԱԳԵՂՋՅՈՒՐ ԱՅԾ, մարխուր, այծեր սեռի երկկճղակավոր կենդանի: Մարմնի երկ.՝ մինչև 1,7 *մ*: Եղջյուրները ոլորված են: Ապրում են Ասիայի լեռներում: Ամենուրեք փոքրաթիվ է. պահպանվում է:

ՊՏՈՒՏԱԿԱՅԻՆ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹ, հելիկոիդ, մակերևույթ, որը գծում է L ուղիղ գիծն անշարժ 00′ առանցքի շուրջ հաստատուն անկյուն. արագությամբ պտտվելով և միաժամանակ առանցքի երկայնքով հաստատուն արագությամբ տեղաշարժվելով (նկ.):



ՊՏՈՒՏԱԿԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ, պինդ մարմնի շարժում, որը կազմված է ուղղագիծ համընթաց շարժումից և համընթաց շարժման ուղղությանը զուգահեռ առանցքի շուրջ մարմնի պտտ. շարժումից:

ՊՏՈՒՏԱԿՐԻՉ, *շնեկ*, պտուտակաձև ելուստներով և շարժաբերի մեխանիզմով լիսեռ: Օգտագործվում է հիմնականում սորուն նյութերի կարճ տարածություններ տեղափոխման համար:

ՊՏՈՒՏԱՉԱՓ, տախոմետր (հուն.՝ tachos – արագություն), մեխանիզմների և մեքենաների մասերի պտտման հաճախականության չափման սարք: Յուցմունքների ինքնաշխատ գրառմամբ Պ. կոչվում է պտուտագրիչ (տախոգրաֆ):

ՊՐԱԳՄԱՏԻԶՄ (հուն.՝ pragma – գործ, գործողություն), փիլ. ուղղություն, որը փիլ–յունը մեկնաբանում է որպես խնդիրների լուծման ընդհ. մեթոդ, որոնց բախվում են մարդիկ իրենց կյանքի տարբեր իրավիճակներում: Ձևավորվել է ԱՄՆ–ում 1870–ական թթ–ին: Հիմն. գաղափարներն արտահայտել է Չ. *Պիրսը*, ուսմունքը մշակել են Ու. Ջեյմսը, Ջ. Դյուին, Ջ. Միդը և ուր.: Ըստ Պ–ի՝ հասկացություններն ու տեսությունները գործն. խնդիրներ լուծելու, էթիկան՝ մարդկանց հաղորդակցությունը կազմակերպելու միջոցներ են, իսկ ճշմարտությունը մեկնաբանվում է իբրև գործն. օգտակարություն, շահավետություն:

ՊՐԱԳՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, մանկավարժ. ուղղություն, տարածված է ԱՄՆ–ում, Անգլիայում և այլ երկրներում: Հիմքում *պրագմատիզմի* գաղափարներն են: Հիմնադիր՝ Ջ. *Դյուի*: Պ. մ. համակարգված կրթությունը փոխարինում է համալիր ուսուցմամբ՝ երեխաների աշխ. և խաղ. գործունեությամբ: Երեխան ինքն է ծրագրում սեփ. անելիքը, ուսուցիչն ընդամենը խորհրդատու է, օգնական:

ՊՐԱԴՈ (Prado), գեղ. թանգարան: Հիմնադրվել է 1819–ին Մադրիդում, շենքը կառուցվել է 1785–1830–ին: Հավաքածուն ընդգրկում է համաշխ. ճանաչում ունեցող XV–XIX դդ–ի իսպ. արվ–ի, XV–XVII դդ–ի իտալացի, նիդեռլանդացի, ֆլամանդացի, գերմանացի վարպետների լավագույն գործերը:

ՊՐԱԿՐԻՏ, միջին հնդ–ի բարբառների (մոտ 38) ընդհ. անվանումը: Պ–ներով են գրվել Աշոկիի արձանագրությունները (մ. թ. ա. III դ.): Եղել է խոսակց. լեզու, ենթարկվել է գր. մշակման: Հնագույնը պալին է:

ՊՐԱԿՐԻՏԻ, հնդ. փիլ–յան հիմն. հասկացություններից, հավերժ. նյութ. սկիզբ, առաջին մատերիա: Հնագույն դից. համակարգերում Պ. նույն՝ բնության ստեղծարար ուժն է, հետագայում (հատկապես՝ սանքայում)՝ բնությունը, որը հակադրվում է հոգևոր ստեղծարար սկզբին՝ *պուրուշին*:

ՊՐԱՀԱ (Praha), *Չեխիայի* մայրաքաղաքը՝ Վլտավայի ափին: Բն.՝ 1,19 մլն (արվարձաններում՝ 1,4 մլն, 2010): Տրանսպորտ. հանգույց է: Ունի օդանավակայան, մետրո: Երկրի խոշորագույն տնտ. կենտրոնն է: Քաղաք. տնտ–յան հիմքը ֆինանսաբանկ.. հատվածն է, առևտուրը, զբոսաշրջային բիզնեսը, առողջապ. և այլ ճյուղեր: Ժամանակակից արտադր–յունը տեղեկատվ. տեխնոլոգիաներն են և դեղագործությունը: Գործում են համալսարաններ, բարձրագույն տեխ. ուսումնարան, գիտությունների և կերպարվ–ի ակադ–ներ, գրադարաններ, Ազգ. և այլ թատրոններ, Ազգ. պատկերասրահ, թանգարան ևն:

Պ–ի տարածքը բնակեցվել է մ. թ. ա. 4–րդ հզ–ամյակում: Մ. թ. VI դ–ում Պ–ում բնակություն են հաստատել սլավոնները: X դ–ից Չեխ. պետության մայրաքաղաքն էր: 973–ին՝ եպիսկոպոսության (1344–ից՝

արքեպիսկոպոսություն) նստավայրը: Պ-ի պատմ. կորիզը Պրահա Գրադն է՝ Սբ Վիտի գոթ. տաճարի (XV–XX դդ.) և թագավոր. պալատի (XII–XVIII դդ.) հետ: Հուշարձաններից են նաև Վերածննդի ոճով Բելվեդեր պալատը (XVI դ.), բազմաթիվ գոթ. և բարոկկո ոճի կառույցները: Նշանակալի են նաև ժամանակակից հաս. շենքերը (ճարտարագիտ. ինստ. ևն): Պատմաճարտ. հուշարձանները Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում են:

ՊՐԱՀԱՅԻ ՌԱԶՄԱԴՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ, ՀՄՊ-ի ժամանակ՝ 1945-ի մայիսի 6–11-ին: Խորհրդ. զորքերը (1-ին, 2-րդ, 4-րդ Ուկր. ռազմաճակատներ, համապատասխանաբար՝ ԽՍՀՄ մարշալներ Ի. Ս. Կոնև, Ռ. Յ. Մալինովսկի, բանակի գեն. Ա. Ի. Երյոմենկո) օգնության գալով Պրահայի ապստամբներին՝ ջախջախել են գերմ. «Կենտրոն» բանակների խմբավորումը և «Ավստրիա» խմբավորման մի մասը, ազատագրել են (մայիսի 9) Պրահան և ավարտել Չեխոսլովակիայի ազատագրումը:

Պ. ռ-յան ժամանակ աչքի են ընկել բազմաթիվ հայեր. գեն-մայոր Սարգիս *Մարտիրոսյանը* գլխավորել է 73-րդ հրաձգ. կորպուսը:

ՊՐԱՄՈԻԴԻԱ ԱՆԱՆԹԱ ԹՈԻՐ (Pramoedya Anantae Toer, 1925–2006), ինդոնեզացի գրող: Հեղինակ է Ինդոնեզիայի ազգ. հեղ-յանը նվիրված «Բեկասի գետի ափին» (1947) վեպի, «Մարդկանց աշխարհը», «Բոլոր ժողովուրդների որդին» (երկուսն էլ՝ 1980), «Քայլերի հետքերը» (1985), «Ապակե տուն» (1988) պատմ. քառերգության:

ՊՐԱՅԱ (Praia), Կաբո Վերդեի մայրաքաղաքը՝ Սանտյագու կղզում: Բն.՝ 132 հզ. (2010): Ծով. նվինգստ է: Ունի օդանավակայան, համալսարան:

ՊՐԱՆԴՏԼ (Prandtl) Լյուդվիգ (1875–1953), գերմանացի մեխանիկոս, աերոդինամիկայի հիմնադիրներից, կիրառ. հիդրոմեխանիկայի գիտ. դպրոցի հիմնադիրը: Ներմուծել է «հեղուկի սահմանային շերտ» հասկացությունը, մշակել խզումային հոսքի տեսությունը: Ներմուծել է Պ-ի թիվը (Pt)՝ չափազուրկ մեծություն, որը բնորոշում է 2 ոչ իզոթերմ հեղուկների (գազերի) հոսքերի նմանությունը (շարժվող հոսքերում ջերմափոխանակության ժամանակ): Պ-ի նախագծով 1908-ին Գյոթինգենում կառուցվել է ոչ մեծ աերոդինամիկ. խողովակ, որը հայտնի է որպես Պ-ի խողովակ:

ՊՐԱՍԱԴ Զայշանկար (1889–1937), հնդիկ գրող: Գրել է հինդիով: Հեղինակ է «Կամայանի» (1935) փիլ. պոեմի, պատմ. ավանդ. այուժեներով «Սկանդագուպտա» (1928), «Չանդրագուպտա» (1931) հոգեբ. դրամաների:

ՊՐԱՍԱԴ Ռաջենդրա (1884–1963), Հնդկաստանի նախագահ՝ 1950–62-ին, Հնդ. ազգ. կոնգրեսի առաջնորդներից:

ՊՐԱՍՈԼՈՎ Լեոնիդ Իվանովիչ (1875–1954), ռուս. հողագետ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1935): Աշխ-ները վերաբերում են հողի ծագումնաբանությանը, դասակարգմանը և քարտեզագրությանը: Հող. պրովինցիաների տեսության և համաշխ. հող. քարտեզի հեղինակներից է (1947): ԽՍՀՄ Պետ. մրց. (1942):

«ՊՐԱՎԴԱ» («Правда» – «Ճշմարտություն»), ռուս. հաս-քաղ. օրաթերթ (1912-ից, Ս. Պետերբուրգ, ապա՝ Մոսկվա): Հիմնադիր՝ Վ. Ի. *Լենին*: Առաջին համարը լույս է տեսել մայիսի 5-ին (խորհրդ. տարիներին այդ օրը նշվել է որպես Մայույի օր): 1914-ին արգելվել է, Փետր. հեղ-յունից հետո՝ 1917-ին վերաբացվել՝ որպես ՌՍԴԲ(բ)Կ ԿԿ-ի և Պետերբուրգի կոմիտեի պաշտոնաթերթ: 1918-ից լույս է տեսել Մոսկվայում. մինչև 1925-ը՝ ՌԿ(բ)Կ ԿԿ և Մոսկվայի կոմիտեի, 1952-ից՝ ԽՄԿԿ ԿԿ պաշտոնաթերթ: 1991–97-ին՝ անկախ, 1997-ից՝ ՌԴ կոմկուսի պաշտոնաթերթ:

ՊՐԱՏՈԼԻՆԻ (Pratolini) Վասկո (1913–1991), իտալացի գրող: Հեղինակ է «Վիպակ խեղճ սիրահարների մասին» (1947) վեպ-ժամանակագրության, «Մագաձինի փողոցը» (1941), «Թաղամաս» (1943), «Ընտանեկան ժամանակագրություն» (1947) ինքնակենսագր. երկերի շարքի, «Իտալական պատմություն» (1955–66) եռերգության:

ՊՐԱՔՍԻՏԵԼԵՍ (Praxiteles, մ. թ. ա. մոտ 390–մոտ 330), հույն քանդ.: Մարմարե քանդակներն աչքի են ընկել ներդաշնակությամբ, դիտողականությամբ («Կնիդոսյան Աֆրոդիտե», «Հանգստացող սատիրը» ևն, հայտնի են հռոմ. կրկնօրինակներից): Պահպանվել է միայն «Հերմեսը և մանուկ Դիոնիսոսը» (մ. թ. ա. մոտ 340, Օլիմպիայի թանգարան) քանդակը:

ՊՐԵԳԼ (Pregl) Ֆրից (1869–1930), ավստրիացի քիմիկոս: Մշակել է (1911) օրգ. նյութերի քանակ. միկրովերլուծության հիմունքները: Նոբելյան մրց. (1923):

ՊՐԵԳՈԼՅԱ, գետ ՌԴ Կալինինգրադի մարզում: Երկ.՝ 1874 *կմ*, ավազանը՝ 15,5 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 83,3 *մ³/վ*: Թափվում է Բալթիկ ծովի Կալինինգրադի ծոցը: Ջրանցքներով միացված է Նեմանի գետին: Նավարկելի է Չեռնյախովսկ ք-ից: Ափին է *Կալինինգրադ* ք-ը:

ՊՐԵԴԱ (Preda) Մարին (1922–1980), ռումին գրող: Հեղինակ է «Մորոմետներ» (հ. 1, 2, 1955, 1967), «Ճնորք» (1975) սոցիալ-հոգեբ. թեմաներով վեպերի, «Մարդկանցից ամենասիրելին» (1980) եռերգության, նաև պատմվածքների, էսսեների, հրապարակախոս. նյութերի:

ՊՐԵԼՅՈՒԴ (լատ.՝ praeludium, praeludo – նախանվագ), երաժշտ. որևէ պիեսի նախորդող ներած. ստեղծագործություն, ապա՝ փոքրածավալ գործիք. պիես: XVIII դ-ից՝ ինքնուրույն գործիք. պիես: Այդպիսի Պ-ները հաճախ միավորված են բոլոր տոնայնություններն ընդգրկող ամբողջ. շարքերում կամ ժող-ներում (Ֆ. Շոպենի, Ա. Ն. Սկրյաբինի, Ս. Վ. Ռախմանինովի, Դ. Դ. Շոստակովիչի, Է. Բաղդասարյանի, Գ. Հովունցի դաշնամուր. Պ-ները ևն):

ՊՐԵԼՈԳ (Prelog) Վլադիմիր (1906–1998), շվեյցարացի (ծագումով՝ սերբ) քիմիկոս-օրգանիկ: ՌԳԱ արտ. անդամ (1966): 1942-ից՝ Շվեյցարիայում: Ուսումնասիրել է մանրէների, այդ թվում՝ ռիֆորմիցինի հակաբիոտիկի, կենսագործունեության արգասիքների կառուցվածքն ու ազդեցության մեխանիզմը: Ժամանակակից տարածաքիմ. անվանակարգման հեղինակներից է: Նոբելյան մրց. (1975, Ջ. *Քորնֆորթի* հետ):

ՊՐԵՄԻՆՋԵՐ (Preminger) Օտտո Լյուդվիգ (1906–1986), ամերիկացի կինոռեժ., պրոդյուսեր: Նկարահանել է «Քեզանով հմայված» (1936), «Լաուրա» (1944), «Կարմեն Ջոնս» (Ժ. Բիզեի օպերայի մոտիվներով, 1954), «Սպանության անատոմիա» (1959), «Այդպիսի լավ ընկերներ» (1972), «Մարդկային գործոն» (ըստ Գ. Գրինի, 1980) և այլ ֆիլմեր:

ՊՐԵՄՉԱՆԴ (Հիանպատրա Շրիվաստավ, 1880–1936), հնդիկ գրող: Գրել է հինդիով և ուրդուով: Հեղինակ է «Ապաստան» (1918), «Սիրո մենաստան» (1922), «Ասպարեզ» (1925), «Մարտադաշտ» (1932), «Մատաղացու կովը» (1936) վեպերի, նաև պատմվածքների, պիեսների և այլ գործերի:

«ՊՐԵՆՍԱ ԼԱՏԻՆԱ» («Prensa Latina»), լատինաամերիկ. տեղեկատվ. գործակալություն: Հիմնադրվել է 1959-ին Հավանայում՝ Կուբայում հեղ-յան հաղթանակից անմիջապես հետո: Թողարկում է նորություններ՝ անգլ., իսպ., պորտուգ., իտալ., ռուս. և թուրք. լեզուներով, զբաղվում է նաև հրտչ. գործունեությամբ, ունի հեռուստա- և ռադիոծառայություններ:

ՊՐԵՇԵՌՆ (Prešéren, Prešern) Ֆրանցե (1800–1849), սլովեն բանաստեղծ: Գր. սլովեն-ի հիմնադիրը: Սլովեն. պոեզիա է ներմուծել գր. ժանրեր (էլեգիա, գազել, բալլադ, սոնետ ևն): Հեղինակ է «Սոնետների պսակ» (1834) շարքի, «Մկրտություն Սավիցայի օրոք» (1836) քնարաէպիկ. պոեմի, «Բանաստեղծություններ» (1847) և այլ ժող-ների:

ՊՐԵՌԱԴՈՎԻՉ (Preradović) Պետար (1818–1872), խորվաթ բանաստեղծ: Հեղինակ է ռոմանտիկ., հայրենասիր. և սիրային թեմաներով քնար. «Առաջնեկները» (1846), «Նոր երգեր» (1851) ժող-ների, «Կրալևիչ Մարկո» (1852) այլաբան. դրամայի:

ՊՐԵՍ ՌԵԼԻԶ, *մամլո հաղորդագրություն* (անգլ.՝ press-release — թողարկում մամուլի համար), ՋԼՄ-ի համար թողարկվող հատուկ բյուլետեններ՝ հրատապ տեղեկատվ. նյութերով: Թողարկում են կառ-յան հիմնարկները, միջազգ. կազմ-յունների գրասենյակները, մամլո բյուրոները ևն:

ՊՐԵՍԼԻ (Presley) Էլվիս (1935–1977), ամերիկացի երգիչ, կինոդերասան: Ճանաչվել է 1950-ական թթ-ի կեսերին՝ որպես ռոքն-ռոլլի առաջատար: Առանձնացել է կատարման զգացմունքայնությամբ, նաև արտաքին նկարագրով և բեմ. արտասովոր պահվածքով: Նկարահանվել է կինոյում:

ՊՐԵՍԿՈՏ (Prescott) Էդվարդ (ծ. 1940), ամերիկացի տնտեսագետ: Աշխ-ները վերաբերում են տնտ. քաղ-յան և շրջափուլ. տատանումների խնդիրներին: Նոբելյան մրց. (2004, Ֆ. *Կյդլանդի* հետ):

ՊՐԵՄՆՅԱԿՈՎ, ռուս դրամատուրգ եղբայրներ: **Օլեգ Միխայլովիչ Պ.** (ծ. 1969) և **Վլադիմիր Միխայլովիչ Պ.** (ծ. 1974), գրել են «սև հումորով», դաժան ցինիզմով հարուստ «Ահաբեկչություն» (2002), «Պատկերելով զոհին» (2002, կինոնկար՝ 2006), «Կիրակի: Սուպեր» (2004) և այլ պիեսներ:

ՊՐԵՍՊԱ (Prespa), լիճ Մակեդոնիայում, Ալբանիայում և Հունաստանում՝ 853 *մ* բարձր-յան վրա: Մակերեսը՝ 285 *կմ²*, խոր.՝ մինչև 54 *մ*: Ենթադրվում է, որ կա ստորգետնյա ջրհոսք Օխրիդի լիճ:

ՊՐԵՍՍ, ռուս. մարզուհի քույրեր: **Իրինա Նաթանովնա Պ.** (1939–2004), ԽՍՀՄ ս. վ. վ. (1960): Օլիմպ. խաղերի չեմպիոնուհի (1960՝ արգելավազք, 1964՝ հնգամարտ): **Թամարա Պ.** (ծ. 1937), ԽՍՀՄ ս. վ. վ. (1960): Օլիմպ. խաղերի (1960՝ գնդի հրում, 1964՝ սկավառակի նետում) և Եվրոպայի (1958, 1962) չեմպիոնուհի:

ՊՐԵՎԵՐ (Prévert) Ժակ (1900–1977), ֆրանսիացի բանաստեղծ, սցենարիստ: Հեղինակ է հակաֆաշիստ. թեմայով «Ընտանեկան հուշեր կամ Պահապան-հրեշտակը» (1930) և այլ պոեմների, «Խոսքեր» (1946), «Տեսարան» (1951), «Ծառեր» (1976) և այլ քնար. ժող-ների, նաև կինոսցենարների: Պ-ի բանաստեղծությունների հիման վրա գրել

են երգեր: Հայ. հրատարակվել են «Արյուն և փետուր» (1965), «Հեքիաթներ չարաճճի երեխաների համար» (1972) և այլ ժող-ներ:


ՊՐԵՎՈ ԴԷ-ՔՅԶԻԼ (Prévost d'Exiles) Անտուան Ֆրանսուա (1697–1763), ֆրանսիացի գրող: Հեղինակ է «Մեր օրերի հելլենուհու պատմությունը» (1740), «Անգլիացի փիլիսոփան կամ Կրոմվելի ապօրինի զավակ Կլիվլենդի պատմությունը» (հ. 1–8, 1731–39) վեպերի: Պ. դ'Է-ին մեծ հռչակ է բերել «Աշխարհիկ կյանքից հեռացած տոհմիկ մարդու հիշատակարանը» (հ. 1–7, 1728–32) երկի 7-րդ հատորը, որտեղ նկարագրված է «Մանոն Լեսկոյի և ասպետ դե Գրիյոյի պատմությունը» սիրավեպը (1731, հայ.՝ 1966):

ՊՐԵՏՈՐ (լատ.՝ praetor, < praeitor – առաջնորդող, առջևից գնացող), Հին Հռոմում նախապես բարձրագույն պաշտոնատար անձ, այնուհետև մ. թ. ա. 367/366-ից՝ կոնսուլի կրտսեր պաշտոնակից: Մ. թ. ա. 242-ից ընտրվել է 2 Պ.: Մեկը դատ. գործերը Հռոմի քաղաքացիների միջև վարելու, մյուսը՝ քաղաքացիների և օտար երկրացիների: Կայսրության ժամանակաշրջանում Պ. են անվանել նաև քաղաքների բարձր պաշտոնյաներին:

ՊՐԵՏՈՐԻԱ (Pretoria), ՀԱՀ-ի մայրաքաղաքը (գործադիր իշխանության մարմինների նստավայրը)՝ Ափիս գետի ափերին: Բն.՝ 1,7 մլն (2010): Ունի օդանավակայան, համալսարան, թանգարան: Զարգացած են սև մետաղագործությունը, մեքենաշինությունը, քիմ., ցեմենտի արդ-յան ճյուղերը: Հիմնադրել են բուրերը 1855-ին: Պ. է կոչվել բուրերի քաղ. գործիչ Ա. Վ. Յ. Պրետորիուսի (Pretorius, 1819–1901) պատվին: 1860-ից՝ Տրանսվաալ նահգ-ի, 1910-ից՝ Հարավաֆրիկ. Միության (1961-ից՝ ՀԱՀ) մայրաքաղաքը:

ՊՐԵՐԻԱՆԵՐ (ֆրանս.՝ prairie – մարգագետին), տափաստան. տիպի բարձր խոտ. բուսականություն Հս. Ամերիկայի սևահող. շրջաններում: Գերակա են հացաբույսերը: Պ. ներկայում գրեթե ամբողջությամբ մշակովի տարածքներ են:

ՊՐԵՑԵՍԻԱ (լատ.՝ praecessio – շարժում առջևից), **կոնապտույտ**, 1. պինդ մարմնի, մասնավորապես՝ *գիրոսկոպի* (հոլակի) պտտման առանցքի շարժման տեսակ, որն առաջացնում է շրջանաձև կոն. մակերևույթ: Նկարում Ω-ն AO առանցքի շուրջ պինդ մարմնի պտտման անկյուն. արագությունն է, ϖ-ն՝ Պ-ի անկյուն. արագությունը: Առանցքը միաժամանակ կարող է կատարել առանցքաճոճք. (նուտացիոն) տատանումներ, որոնց բացակայության դեպքում Պ. կոչվում է կանոնավոր:



2. Աստղագիտ-յան մեջ՝ երկրագնդի պտտման առանցքի դանդաղ շարժումը շրջանաձև կոն. մակերևույթով: Այդ կոնի առանցքն ուղղահայաց է երկր. ուղեծրի հարթությանը, իսկ առանցքի և կոնի ծնիչի կազմած անկյունը հավասար է 23º27′: Երկրի պտտման առանցքի Պ-ի պարբերությունը մոտավորապես 26 հզ. տարի է: Պ-ի հետևանքով գարնան. օրահավասարի կետը խավարածրով շարժվում է Արեգակի թվացող տարեկան շարժին ընդառաջ (օրահավասարի ազդարարում)՝ անցնելով տարեկան 50′24″: Աշխարհի բևեռը տեղա-շարժվում է աստղ. երկնքում, աստղերի հասարակած. կոորդինատներն անընդհատ փոփոխվում են: Պ-ական շարժման հետ միասին Երկրի առանցքը ենթարկվում է նաև առանցքաճոճք. տատանումների:

ՊՐԵՅՊԻՏԱՑՈՒՄ (լատ.՝ praecipitatio – սրընթաց վայրէջք), հակամարմնի հետ հակածինի կոմպլեքսի նստման իմուն. ռեակցիան: Կիրառվում է վարակիչ հիվանդությունների ախտորոշման, սանհիգիենային հսկողության և դատ. բժշկության մեջ:

ՊՐԵՖԵԿՏ (լատ.՝ praefectus, < praeficio – պետ, գլխավոր), Հին Հռոմում պաշտոնատար անձ. նշանակվել է հսկելու հռոմ. *պրեֆեկտուրաները*: Ժամանակակից մի շարք երկրներում կենտր. կառ-յան ներկայացուցիչն առանձին վոմ-ներում:

ՊՐԵՖԵԿՏՈՒՐԱ (լատ.՝ praefectura), հիմն. վոմ Հռոպոնիայում և նրա պաշտոն. անվանումը:

ՊՐԵՖՈՐՄԻՐՈՒՄ (լատ.՝ preformare – նախաձևավորել), ուսմունք, ըստ որի՝ օրգանիզմների սեռ. բջիջներում կան սաղմի զարգացումը և ձևավորվող օրգանիզմի հատկանիշները կանխորոշող նյութ. կառուցվածքներ: Օրգ. զարգացման արդի տեսությունը, ընդունելով պրեֆորմիստ. կառուցվածքները (օր.՝ ԴՆԹ ևն), հաշվի է առնում նաև էպիգենետիկ. (տես *Էպիգենեզ*) գործոնները:

ՊՐԺԵՄԻՍԼ I (Prjemysl) Օտակար (1155-ի և 1170-ի միջև–1230), Չեխիայի իշխան՝ 1192–93 և 1197-ին, թագավոր (1198-ից): Ամրապնդել է կենտր. իշխանությունը: Հասել է նրան, որ կայսր Ֆրիդրիխ II Հոհենշտաուֆենը ճանաչել է Չեխիայի անկախությունը (1212):

ՊՐԺԵՄԻՍԼ II ՕՏԱԿԱՐ (մոտ 1230–1278), Չեխիայի թագավոր՝ 1253-ից: Ամրապնդել է թագավոր. իշխանությունը և Չեխ. պետության ռազմ. հզորությունը: Զոհվել է մարտում:

ՊՐԺԵՎԱԼՍԿԻ Նիկոլայ Միխայլովիչ (1839–1888), ռուս աշխարհագետ, ճանապարհորդ, Կենտր. Ասիայի հետազոտող: Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. անդամ (1878): Գեն-մայոր (1886): Ղեկավարել է Ուսսուրիյսկի երկրամասը (1867–69) և Կենտր. Ասիան (1870–85) ուսումնասիրող արշավախմբերը: Առաջինն է նկարագրել Կենտր. Ասիայի շատ շրջանների բնությունը, հայտնաբերել մի շարք լ-շղթաներ, գոգավորություններ ու լճեր Կունլունում, Նանշանում և Տիբեթում: Հավաքել է բույսերի և կենդանիների արժեքավոր նմուշներ: Նկարագրել է վայրի ուղտը, ձին (Պ-ու ձի) և այլ ողնաշարավորների:

ՊՐԺԵՎԱԼՍԿՈՒ ՁԻ, ձիերի սեռի սմբակավոր կենդանի: Հայտնաբերել է Ն. Մ. *Պրժևալսկին* Կենտր. Ասիայում (1879): Իսկական ձիերի ենթասեռի միակ վայրի տեսակն է: Պահպանվել է կենդր. այգիներում և արգելանոցներում: Բնության մեջ հայտնի չէ:

ՊՐԻԱՄՈՍ (Priamus), Տրոյայի վերջին արքան հուն. դից-յան մեջ: *Հեկտորի* ամուսինը, *Կասանդրայի*, *Հելկտորի*, *Պարիսի* և ուր. հայրը, որոնք գերեվարվել կամ սպանվել են Տրոյայի պաշարման ժամանակ: Մահացել է Տրոյայի գրավման գիշերը Զևսի խորանի մոտ, որտեղ նա փրկություն էր փնտրում Նեոպտողեմոսի թրից:


ՊՐԻԲԻՆԱ (ծ. թ. անհտ–860), սլավոն իշխան: 842-ից իշխել է Բլատենսկ իշխանությունում, հիմնադրել է նրա մայրաքաղաք Բլատենը (Բլատենգրադ):

ՊՐԻԳՈԺԻՆ (Prigogine) Իլյա Ռոմանովիչ (1917–2003), ռուս ֆիզիկոս և ֆիզքիմիկոս, 1921-ից՝ արտերկրում: Անհավասարակշիռ շարժընթացների թերմոդինամիկայի հիմնադիրներից: ՌԳԱ արտ. անդամ (1982): Ապացուցել է (1947) հետագայում իր անունով կոչված **Պրիգոժինի թեորեմը**, ըստ որի՝ համակարգի հավասարակշռային վիճակին անցումը խոչընդոտող արտաքին պայմանների դեպքում համակարգի կայուն վիճակը համապատասխանում է էնթրոպիայի նվազն ածին: Նոբելյան մրց. (1977):

ՊՐԻԳՈՎ Դմիտրի Ալեքսանդրովիչ (1940–2007), ռուս գրող, նկարիչ: Հեղինակ է «Բանաստեղծական գրեր» (1985), «Անդրսահմանյան սիրահարներ» (1996) և բանաստեղծությունների այլ ժող-ների, նաև պիեսների, էսսեների, գրաֆիկ. գործերի:

ՊՐԻԵԴԵ (Priede) Գունարս (1928–2000), լատիշ դրամատուրգ: Լատվ. ԽՍՀ ժող. գրող (1988): Հեղինակ է «Քո բարի անունը» (1965), «Այվարին սպասելով» (1974), «Կաչաղակի երգը» (1978), «Մկների բույրը» (1987) և այլ պիեսների: Լատվ. ԽՍՀ Պետ. մրց. (1959):

ՊՐԻԶՄԱ (հուն.՝ prisma – հատվածք), **հատվածակողմ**, *բազմանիստ*, որի 2 նիստերը (հիմքերը) հավասար, միմյանց զուգահեռ բազմանկյուններ են, իսկ կողային նիստերը՝ զուգահեռագծեր (նկ. ա, բ): Կողային նիստերի թվից կախված՝ տարբերում են եռանիստ, քառանիստ ևն: Պ-ները, որոնց հիմքերը զուգահեռագծեր են, կոչվում են զուգահեռանիստեր (նկ. գ, դ): Եթե բոլոր նիստերը հիմքերի հետ կազմում են ուղիղ երկնիստ անկյուններ, Պ. կոչվում է ուղիղ:



ՊՐԻԶՄԱ ՕՊՏԻԿԱԿԱՆ, թափանցիկ նյութերից (ապակի, կվարց, ֆլյուորիտ, LiF, NaCl, KBr ևն) պատրաստված *պրիզմա*: Բաժանվում են 3 դասի՝ սպեկտր. (դիսպերս)՝ օգտագործում են լույսի դիսպերսիայի հետ կապված երևույթների ուսումնասիրության համար և կիրառում սպեկտր. սարքերում, անդրադարձնող՝ օպտիկ. համակարգերում ճառագայթների ուղղությունը փոխելու համար, և բևեռացնող պրիզմաներ:

ՊՐԻԶՐԵՆ, ք. Կոսովոյում: Բն.՝ 131,3 հզ. (2010): Զարգացած է արհեստագործությունը: Կան եկեղեցիներ (X–XIV դդ., որմնանկարներով, այդ թվում՝ Լևիշկի Բոգորոդցիներ, Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է) և մզկիթ (XVI–XVII դդ.):

ՊՐԻԽՈՒՏԿՈ Անտոնինա Ֆեոդորովնա (1906–1998), ուկրաինացի ֆիզիկոս: Ուկր. ԽՍՀ ԳԱ ակադ. (1964): Սոց. աշխ. հերոս (1976): Աշխ-ները վերաբերում են բյուրեղների սպեկտրոսկոպիային, մոլ. բյուրեղներում էքսիտոնների փորձարար. ուսումնասիրությանը: Լենինյան մրց. (1966):

ՊՐԻԿԱԶՆԵՐ, 1. կառավարման կենտր. մարմիններ Ռուսաստանում XVI–XVIII դդ-ի սկզբներին: 2. Պալատ. կառավարման տեղ. մարմիններ (XVI–XVII դդ.): 3. Ստրելեցների գնդերի անվանումը XVI–XVII դդ-ում:

ՊՐԻՄԱԿՈՎ Եվգենի Մաքսիմովիչ (1929–2015), ռուս պետ–քաղ. գործիչ, տնտես. գիտ–յան ինստ–ի, 1985–89–ին՝ Համաշխ. տնտ–յան և միջազգ. հարաբերությունների ինստ–ի տնօրեն: 1991–ի նոյեմբ–ից՝ ԽՍՀՄ (այնուհետև՝ Ռուսաստանի) արտաքին հետախուզության ծառայության տնօրեն: 1996–98–ին՝ ԱԳ նախարար, 1998–99–ին՝ ՌԴ Կառ–յան նախագահ: 2001–11–ին՝ ՌԴ առևտրաարդ. պալատի նախագահ: Աշխ–ները վերաբերում են ժամանակակից համաշխ. տնտ–յան ու քաղ–յան խնդիրներին:

ԽՍՀՄ (1980), ՌԴ (2014) Պետ. մրց–ներ:

ՊՐԻՄԱՏՆԵՐ (Primates), կաթնասունների կարգ: Հայտնի է ավելի քան 200 տեսակ՝ լեմուրից մինչև մարդը: Բաժանվում են 2 ենթակարգի՝ կիսակապիկների և կապիկների: Պ–ին բնորոշ են հնգամատ վերջավորությունները, շարժուն բութ մատը, որը հաճախ հակադրվում է մյուսներին: Մազածածկը լավ է զարգացած՝ վառ գունավորումներով: Ունեն մարմինն ուղղաձիգ պահելու հատկություն, զարգացած են տեսողությունն ու լսողությունը: Օժտված են զգացմունք. վիճակի արտահայտման, ձայների ու ժեստերի հարուստ հավաքածուով: Ապրում են հիմնականում արևադարձ. ու մերձարևադարձ. անտառներում՝ ծառերի վրա, հիմնականում՝ ցերեկ. կյանքով՝ հոտերով կամ ընտանեկան խմբերով, որտեղ նկատելի է ենթակայության աստիճանակարգությունը: Բազմանում են ամբողջ տարին. մեծ մասն ունենում է հիմնականում 1 ձագ: Վերջին շրջանում նրանց բնակատեղիների չվերահսկվող օգտագործման պատճառով քանակն էապես նվազել է: Բազմաթիվ տեսակներ գրանցված են ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՊՐԻՄԻՏԻՎԻԶՄ, XIX դ–ի վերջ–XX դ–ի արվ–ում. պատկերման միջոցների միտումնավոր պարզունակացումը, «պրիմիտիվ արվեստի» (նախնադար. և ժող. ստեղծագործություն, ավանդ. արվ. ևն) կանոնների կիրառումը: Պ–ին անդրադարձել է նաև Պ. *Գոգենը*: Պ. հաճախ փոխարինվում է «նաիվ արվեստ» տերմինով, որով բնորոշում են պրոֆեսիոնալ կրթություն չունեցող արվեստագետների ստեղծագործությունը (Ն. Փիրոսմանաշվիլի՝ Վրաստան, Ի. Գեներալիչ՝ Խորվաթիա, և ուր.): Պ–ի ներկայացուցիչներից են Վ. Խոջաբեկյանը, Ա. Ճերմակյանը, Վ. Էլիբեկյանը, Հ. Ջաքարյանը, Ա. Բդեյանը, ժող. վարպետներ Վ. Ղազարյանը, Գ. Ամիրյանը և ուր., Ա. Կնյազյանը (Ֆրանսիա), Մ. Բոյաջյանը (Բելգիա), Ն. Պողոսյանը (ԱՄՆ) և ուր.:

ՊՐԻՄՈ ԴԵ ՌԻՎԵՐԱ (Primo de Rivera), մարկիզ դե Էստելա (de Estella) Միգել (1870–1930), պետ. գործիչ, գեն.: Խ. Ա. *Պրիմո դե Ռիվերայի* հայրը: 1923–ի սեպտ–ին կատարել է պետ. հեղաշրջում, գլխավորել կառ–յունը, դարձել է Իսպանիայի փաստ. դիկտատոր (մինչև 1930–ի հունվ.):

ՊՐԻՄՈ ԴԵ ՌԻՎԵՐԱ Խոսե Անտոնիո (1903–1936), «Իսպանական փաղանգ» ֆաշիստ. կուս–յան հիմնադիրը (1933): Մ. *Պրիմո դե Ռիվերայի* որդին: Գնդապետ. կաիարվել է հանրապետ. դատարանի վճռով՝ ահաբեկչ. գործունեության և խռովություն կազմակերպելու համար:

ՊՐԻՄՈՐԻԵԻ ԵՐԿԱՄԱՍ, վտմ ՌԴ Հեռավորարլ. դաշն. օկրուգում: Տարածքը՝ 164,7 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1988 մլն (2009): Ունի 22 շրջան, 12 քաղաք, 30 քտա: Վարչ. կենտրոնը՝ *Վլադիվոստոկ*: Կազմավորվել է 1938–ին: Ափերը ողողվում են Ճապոն. ծովի ջրերով: Տարածքի մեծ մասը գրավում են Սիխոտե Ալինի լ–ները (բարձր.՝ 1854 *մ*), հվ–արմ–ում է Մերձխանկայան դաշտավայրը (Խանկա լճի հետ): Խոշոր գետն Ուսսուրին է: Պ–ում են Սիխոտե Ալինի, Լազովսկի, Ուսսուրիական և այլ արգելանոցներ: Զարգացած են սննդի (ձկնամթերքի), մեքենաշինության, քիմ., փայտամշակման, թաղանթանյութի, շինանյութերի արդ–յան ճյուղերը:

ՊՐԻՆԳԼ (Pringle) Ջոն (1707–1782), շոտլանդացի բժիշկ, ռազմ. բժշկագիտ–յան հիմնադիրներից: Լոնդոնի թագավոր. ընկ–յան անդամ (1758, նախագահ՝ 1772–78–ին): Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1776): Աշխ–ները վերաբերում են զորքերում վարակիչ հիվանդությունների (այդ թվում՝ համաճարակ.) կանխարգելմանը, ռազմ. հիգիենային:

ՊՐԻՆՑԻՊ (Princip) Գավրիլո (1894–1918), Հարավսլավիայի Ազգ. հերոս: «Երիտասարդ Բոսնիա» գաղտնի կազմ–յան անդամ (1914): Վերջինի հանձնարարությամբ սպանել է (28.06.1914) ավստրո–հունգ. գահի ժառանգորդ Ֆրանց Ֆերդինանդին (տես *Սարաևոյի սպանություն*): Սահացել է բանտում:

ՊՐԻՆՑԻՊԱՏ (լատ.՝ principatus, < princeps – առաջին), Հին Հռոմում կայսրության ժամանակաշրջանում (մ. թ. ա. 27–մ. թ. 193) ձևավորված յուրօրինակ միապետության պայման. անվանումը պատմ. գրկ–յան մեջ: Օկտավիանոս Օգոստոսը մ. թ. ա. 29/28–ին դարձել է սենատի պրինցեպս՝ ծերակուտականներից առաջինը (այստեղից էլ՝ «Պ.» անվանումը):

ՊՐԻՇՎԻՆ Միխայիլ Միխայլովիչ (1873–1954), ռուս գրող: Հեղինակ է «Կռունկի հայրենիքը» (1930), «Ժենշեն» (1933) վիպակների, «Ֆացելիա» (1940) արձակ պոեմի, «Ձնհալի կաթոցն անտառում» (1943) մանրապատումների շարքի, «Նավաշինական անտառաթավուտ» (1954) վիպակ–հեքիաթի, «Թագավորական ճանապարհ» (հրտ.՝ 1957) վեպ–հեքիաթի, «Կաշչեյի շղթան» (հրտ.՝ 1960) ինքնակենսագր. վեպի, «Օրագրեր» (հ. 1–9, հրտ.՝ 1991–2010) ժող–ի: Հայ. հրատարակվել են «Աղվեսի հացը» (1946), «Կռունկը» (1955) պատմվածքները, «Արևի շտեմարանը» (1947) հեքիաթը, «Իմ պարոնի բարեկամներին» (1975), «Ոսկի մարգագետին» (1989) վիպակների ու պատմվածքների ժող–ները:

ՊՐԻՇՏԻՆԱ, Կոսովոյի վարչ. կենտրոնը: Բն.՝ 212, 8 հզ. (2010): Պ–ի մերձակայքում է Գրաչանիցա վանքը (XIV դ., որմնանկարներով՝ XIV–XVI դդ.՝ Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է):

ՊՐԻՈՆՆԵՐ, սպիտակուց. ծագման վրաբակ. ազդակներ, որոնք առաջացնում են մարդու և կենդանիների գլխուղեղի նյարդակազմափոխ. հիվանդություններ (էնցեֆալոպաթիաներ), այդ թվում՝ Կրեյցֆելդ–Յակոբի հիվանդությունը՝ ոչխարների կուրու, սկրեյպի, խոշոր եղջերավորների սպունգային էնցեֆալոպաթիա: Հայտնագործել է Ս. *Պրուզինները*:

ՊՐԻՊՅԱՏ, գետ Բելառուսում և Ուկրաինայում, Դնեպրի աջ վտակը: Երկ.՝ 761 *կմ*, ավազանը՝ 114,3 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 513 *մ*^{3}/*վ*: Վիսլայի հետ միացած է Դնեպր–Բուգյան ջրանցքով: Նավարկելի է 591 *կմ*:

ՊՐԻՍՏԱՎԿԻՆ Անատոլի Իգնատևիչ (1931–2008), ռուս գրող: Հեղինակ է «Գիշերել է ոսկե ամպիկը» (1987) և այլ վիպակների, Ռյազանի էլ. երկթղ–ու շին–յան և ստալին–յան բռնարարքների մասին «Ռյազանկա (Արվարձանների մարդը)» (1991) ինքնակենսագր., «Մահվան ստվերի հովիտը» (հ. 1–3, 2000) վեպերի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1988):

ՊՐԻՍՏԼԻ (Priestley) Ջոզեֆ (1733–1804), անգլիացի մատերիալիստ փիլ., հաս. գործիչ, քիմիկոս, դեիզմի կողմնակից: Փարիզի ԳԱ (1772), Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. (1780) անդամ: 1794–ից՝ ԱՄՆ–ում: «Հետազոտություններ մատերիայի և հոգու մասին» (1777) երկում պնդել է, որ բնությունը մատերիա է, հոգին՝ մատերիայի հատկություն: Զարգացրել է Դ. Հարթլիի ուսմունքը զուգորդությունների մասին: Հայտնաբերել է թթվածինը (1774, Նեելիից անկախ), ստացել ջրածնի քլորիդ և ամոնիակ (1772–74), ցույց տվել, որ օդը բուսականության ազդեցությամբ վերականգնում է իր հատկությունները:

ՊՐԻՍՑԻԱՆՈՍ ԿԵՍԱՐԱՑԻ (Priscianus Caesariensis), V դ–ի հռոմեացի քերական: Հեղինակ է «Քերականական խորհուրդներ» (հ. 1–18) լատ. դասագրքի, որը միջնադարում մեծ տարածում է ունեցել և ծառայել է լատ. բանասիրության ուսումնասիրության համար:

ՊՐԻՎԱԼՈՎ Դյոտր Լեոնիդովիչ (ծ. 1932), ռուս կենսաֆիզիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1984): Տեսածրող միկրոկալորիաչափ. մեթոդով հետազոտել է կենսապոլիմերների կառուցվածքը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1978):

ՊՐԻՎԱԼՈՎԱ Իրինա Անատոլևնա (ծ. 1968), ռուս մարզուհի (աթլետիկա): ԽՍՀՄ ս. վ. վ. (1992): Եվրոպայի չեմպիոն (1994, 1998), աշխարհի ռեկորդակիր (1993, 1994), Եվրոպայի գավաթի 5–ակի գավաթակիր:

ՊՐԻՏԻՑԿԻ Սերգեյ Օսիպովիչ (1913–1971), խորհրդ. կուս. և պետ. գործիչ: 1944–45–ին՝ Լեհաստանում պարտիզան. շարժման շտաբի պետ: 1962–68–ին՝ Բելոռուսիայի կոմկուսի ԿԿ քարտուղար: 1968–ից՝ ԲԽՍՀ ԳԽ նախագահության նախագահ:

ՊՐԿԱԽՍ, մարդու և կենդանիների սուր վարակիչ հիվանդություն: Հարուցիչը Պ–ի բացիլն է, որը հողի մեջ ընկնում է մարդու կամ կենդանիների աղիներից և կարող է երկար ժամանակ պահպանվել սպորի տեսքով: Օրգանիզմ թափանցում է հիմնականում մաշկի վնասվածքներով կամ լորձաթաղանթներով: Դրսևորվում է տանջող ջղաձգություններով, հնարավոր են շնչառ. մկանների ջղաձգություններ: Կիրառվում են կանխարգելիչ և արտակարգ (արտաքին ծածկույթի վնասվածքների դեպքում) ներարկումներ:

ՊՐՅԱՆԻՇՆԻԿՈՎ Դմիտրի Նիկոլաևիչ (1865–1948), ռուս. ագրոքիմ. դպրոցի հիմնադիրը: ԽՍՀՄ ԳԱ (1929), ՀամԳԳԱ (1935) ակադ.: Սոց. աշխ. հերոս (1945): Աշխ–ները վերաբերում են բույսերի ազոտ. սննդառության տեսությանը (1916), պարարտանյութերի կիրառման հարցերին: Մշակել է հողերի ֆոսֆորացման գիտ. հիմունքները: «Ագրոքիմիա» (ռուս., 1940) հիմնարար դասագրքի հեղինակն է: Լենինի (1926), ԽՍՀՄ Պետ. (1941) մրց–ներ:

ՊՐՅՈՒԴՈՆ (Prud'hon) Պիեռ Պոլ (1758–1823), ֆրանսիացի գեղանկարիչ: Հեղինակ է դից. և այլաբան. սյուժեներով դաս.

կոմպոզիցիաների («Փսիքեի առևանգումը», 1808), դիմանկարների (Կոմսուհի Ժոզեֆինայի, 1805), պատկերազարդումների, վիմագրությունների:

ՊՐՈ..., ՊՐՈՏՈ..., ՊՐՈՏՈ... (հուն.՝ protos – առաջին, նախա...), բարդ բառերի սկզբնամաս. ցույց է տալիս առաջնային լինելը, զարգացման նախորդ փուլը, նախահիմքը (օր.՝ ***պրոգևսպերոն, պրոտոպլազմա***), բարձր աստիճան (առավելապես՝ եկեղեց. կոչումներում):

«ՊՐՈ ԱՐՄԵՆԻԱ» («Pro Armenia» – Հանուն Հայաստանի»), հաս–քաղ. երկշաբաթաթերթ [1900–14, Փարիզ՝ ֆրանս., 1912–13–ին՝ «Արևելքի ժողովուրդների համար» («Pour les peuples d'Orient»)]: Նախաձեռնող՝ Քրիստափոր ***Միքայելյան***, խմբագրակազմ՝ Պ. ***Քիւար*** (գլխ. խմբ.), Ժ. ***Լոնգև***, Ժ. ***Կլեմանսո***, Ա. ***Ֆրանս***, Ժ. ***Ժորես***, Ֆրենսիս դը Պրեսանսե, Վիկտոր Բերար:

ՊՐՈԲԻՈՏԻԿՆԵՐ, կենդանի միկրոօրգանիզմներ և մանրէային ծագման նյութեր, որոնք նպաստում են տիրոջ օրգանիզմում ֆիզիոլոգ., կենսաքիմ. և իմուն. ռեակցիաների լավացմանը՝ նրա բնականոն միկրոֆլորայի վերականգնման ճանապարհով:

ՊՐՈԳԵՍՏԵՐՈՆ (< լատ. pro – նախա..., համար և gestatio – հղիություն), մարդու և ողնաշարավոր կենդանիների իգական ստերոիդային հորմոն: Առաջանում է հիմնականում ձվարանների դեղին մարմնում: Արգանդը նախապատրաստում է ձվի ներդրմանն ու սննդառությանը, կնոջ օրգանիզմում կարգավորում է նյութափոխանակությունը հղիության շրջանում: Պ. և նրա բնական ու արհեստ. նմանակները (գեստագեններ) կիրառվում են բժշկության մեջ:

«ՊՐՈԳՆՈԶ», ԵԱՄ՝ արեգակն. ակտիվության և Երկրի մագնիսոլորտի վրա նրա ազդեցության ուսումնասիրության համար: Արձակվել է ԽՍՀՄ–ում 1972–85–ին (10 հատ):

«ՊՐՈԳՐԵՍ», տրանսպորտ. տիեզ. սարքերի սերիա: Ստեղծվել է ԽՍՀՄ–ում՝ «***Սոյուզ***» տիեզերանավի հիմքի վրա. առաջին թռիչքը՝ 1978–ին: Ծառայում են ուղեծրակայանների երկարատև գործունեությունն ապահովելու՝ վառելանյութ, սարքավորումներ ևն մատակարարելու համար:

ՊՐՈԳՐԵՍԻՎ ՊԱՐԱԼԻԶ, գլխուղեղի սիֆիլիս. ախտահարում. առաջանում է սիֆիլիսով հիվանդանալուց 5–15 տարի անց: Բնորոշվում է հոգեկանի հարաճուն անկումով՝ մինչև թուլամտություն, խոսքի, շարժող. խանգարումներով ևն:

ՊՐՈԶԵՐՊԻՆԱ, պտղաբերության և անդրաշխարհի աստվածուհին հոռմ. դից–յան մեջ: Պ–ին համապատասխանում է հուն. ***Պերսեփոնեն***:

ՊՐՈԹԵԶՆԵՐ (հուն.՝ protessis – միացում), ժամանակավոր կամ մշտ. մեխ. հարմարանք, որը փոխարինում է բացակա ծայրանդամներին կամ մարմնի այլ մասերի ու օրգանների: Լինում են կոսմետիկ Պ. (օր.՝ աչքի), կամ արատի գործառն. թերության վերացման համար (օր.՝ ձեռնաթաթի, ոտքի, ատամի և այլ Պ.):

ՊՐՈԹԵՈՍ (Proteus), ծով. աստվածություն հուն. դից–յան մեջ, ***Պոսեյդոնի*** որդին: Նրա բնորոշ առանձնահատկություններն էին ծերությունը, բազմազավակությունը, կերպարանափոխությունները և բազմիմացությունը (մարգարեական շնորհ): Փխբ. իմաստով՝ անկայուն, փոփոխական մարդ:

ՊՐՈԹՐՈՄԲԻՆ, արյան պլազմայի բարդ սպիտակուց (գլիկոպրոտեիդ): Արյան մակարդման կենսընթացում Պ–ից առաջանում է թրոմբի ձևավորումը խթանող պրոթրոմբինազ ֆերմենտը:

ՊՐՈԼԱԿՏԻՆ, **լակտոգեն հորմոն**, հիպոֆիզում արտադրվող հորմոն: Խթանում է կաթնասունների կաթնագեղձերի զարգացումը, կաթի առաջացումը և մայրության բնազդի ձևավորումը: Նպաստում է որոշ կենդանիների (առնետներ, մկներ) ձվարանների դեղին մարմնի ֆունկցիային: Սպիտակուց է:

«ՊՐՈԼԵՏԱՐ», քաղ., հաս., գր. շաբաթաթերթ (1924–26, Նյու Յորք): Ամերիկայի բանվ. (կոմ.) կուս–յան հայկ. հատվածի պաշտոնաթերթը:

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏ, տես ***Բանվոր դասակարգ***:

«ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԿՈՒԻԼԸ», բոլշևիկյան պարբերաթերթ (1903–05, Բաքու, ապա՝ Թիֆլիս՝ հայ., վրաց., ռուս.): Ստեղծվել է «Պրոլետարիատ» (1902, Ժնև՝ 1 համար) և «Բրձոլա» թերթերի միավորումով: Կովկասյան միութ. կոմիտեի պաշտոնաթերթ: Խմբ–ներ՝ Ստեփան Շահումյան, Իոսիֆ Ստալին, Ա. Ծուլուկիձե, Միխայիլ Ցխակայա:

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ (լատ.՝ proletarii, < proles – սերունդ), ըստ թագավոր ***Սերվիոս Տուլիոսին*** (մ. թ. ա. VI դ.) վերագրվող դասային ռեֆորմի՝ սեփականություն չունեցող (բացի իր սերնդից), ապահարկ և իրավաբանորեն ազատ քաղաքացիներ Հին Հռոմում: I դ–ից՝ հաս–յան ապադասակարգայնացած խավեր:

ՊՐՈԼԻՆ, տարացիկլ. ամինաթթու: Պարունակվում է բոլոր օրգանիզմներում ազատ վիճակում և մի շարք սպիտակուցների բաղադրության մեջ:

ՊՐՈԼԻՖԵՐԱՑՈՒՄ (< լատ. proleus – ընձյուղ, սերունդ և fero – բերել), կենդ. կամ բուս. օրգանիզմների հյուսվածքների ծավալ. աճումը բջիջների նորագոյացման (բազմացման) շնորհիվ: Կարող է լինել ֆիզիոլոգ. (օր.՝ հղիության և կերակրման ժամանակ կաթնագեղձի Պ.) և ախտաբան. (օր.՝ ուռուցքի Պ.):

ՊՐՈԼՅՈՎԻԱԼ ՆՅՈՒԹԱԾՔՆԵՐ (լատ.՝ proluvium – լվացում), **լվացատարումային նստվածքներ**, փխրուն գոյացումներ, որոնք առաջանում են ապարների քայքայումից և ջրահոսքերով տարվում բարձունքների ստորոտներ ու կազմում արտաբերման կոներ: Զարգանում են հիմնականում չոր. կամ կիսաչոր. շրջաններում:

ՊՐՈՒԽԱՍԿԱ, **Պրոխազկա** (Procháska), Իրժի (Գեորգ, 1749–1820), չեխ անատոմ, ֆիզիոլոգ և ակնաբույժ: Զարգացրել է նյարդ. ռեֆլեքսի, ռեֆլեքս. աղեղի, նյարդ. համակարգի նշանակության, որպես արտաքին միջավայրի և օրգանիզմի միջև միջնորդի մասին պատկերացումը:

ՊՐՈՒԽՈՐ ԳՈՐՈԴԵՑՅԻ, XV դ–ի սկզբի ռուս նկարիչ: 1405–ին Թեոֆանես Հույնի և Ա. ***Ռուբլյովի*** հետ նկարազարդել է Մոսկվայի Կրեմլի Ավետման (որմնանկարները չեն պահպանվել) տաճարը: Նրան են վերագրվում մի շարք սրբապատկերներ:

ՊՐՈՒԽՈՐԵՆԿՈ Ժաննա (Ժանետա) Տրոֆիմովնա (1940–2011), ռուս. դերասանուհի: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1988): Նկարահանվել է «Բալլադ զինվորի մասին», «Իսկ եթե դա սեր է», «Բալզամինովի ամուսնությունը», «Մենք ապրել ենք հարևանությամբ», «Անդունդ» և այլ ֆիլմերում:

ՊՐՈՒԽՈՐՈՎ Ալեքսանդր Միխայլովիչ (1916–2002), ռուս ֆիզիկոս, քվանտ. էլեկտրոնիկայի հիմնադիրներից: ՌԴԱ ակադ. (1966): Սոց. աշխ. հերոս (1969, 1986): Ստեղծել է (Ն. Գ. ***Բասովի*** հետ) առաջին քվանտ. գեներատորը (մազեր): Աշխ–ները վերաբերում են պարամագնիս. մազերներին, բաց ռեզոնատորներին, գազադինամիկ. և պինդմարմնային լազերներին, տեսանելի ընդգրկույթի և ԵԿ լազերներին, ոչ գծային օպտիկային, նյութի հետ հզոր լազեր. ճառագայթման փոխազդեցությանը: Խորհրդ., ապա՝ Ռուս. մեծ հանրագիտարանի գլխ. խմբ., գիտահրտչ. խորհրդի նախագահ (1969–2001):

Լենինյան (1959), ԽՍՀՄ (1980), ՌԴ (1998) պետ., Նոբելյան (1964, Ն. Գ. Բասովի և Չ. ***Թաունսի*** հետ) մրց–ներ:

ՊՐՈՒԽՈՐՈՎ Յուրի Վասիլևիչ (1929–2013), ռուս մաթեմատիկոս: ՌԴԱ ակադ. (1972): Աշխ–ները վերաբերում են հավանականության տեսությանը (անկախ պատահական մեծությունների գումարի սահման. թեորեմներ, մեծ թվերի ուժեղացված օրենք, պատահական շարժընթացներ): Լենինյան մրց. (1970):

ՊՐՈՑԱՄԲԻՈՒՄ, բույսի կողքային ***մերիստեմ***, որից տարբերակվում են առաջնային փոխադրող հյուսվածքները և անցկացնող խրձերը: Պ. առաջանում է ընձյուղի և արմատի ածման կոներում՝ առաջինում՝ մերիսթեմային թելերի, երկրորդում՝ գլանի կամ օղակի ձևով: Միաշաքիլ բույսերի Պ. ամբողջությամբ օգտագործվում է հյուսվածքում փոխադրող փակ խրձերի տարբերակման ժամանակ:

ՊՐՈՑԱՐԻՈՏՆԵՐ (< ***պրո...*** և լատ.՝ karyon – կորիզ), օրգանիզմներ, որոնք, ի տարբերություն ***էուկարիոտների***, չունեն ձևավորված բջջ. կորիզ: Գենետիկ. նյութը ԴՆԹ–ի օղակաձև շղթայի ձևով տեղակայված է նուկլեոիդում և իսկական քրոմոսոմներ չի առաջացնում: Բնորոշ սեռ. կենսընթացը բացակայում է: Պ. են բակտերիաները, այդ թվում՝ ցիանոբակտերիաները (կապտականաչ ջրիմուռներ):

ՊՐՈԿԼԵՍ (Պրոկղ, Proclus), ***Դիադոխոս*** (412–485), հույն փիլ. և մաթեմատիկոս, անտիկ փիլ–յան վերջին խոշոր դեմքը: 437–ից՝ Պլատոնյան ակադ–ի (Աթենք) ղեկ.: Համակարգել է նորպլատոնականությունը, մասնավորապես՝ ***Պլոտինի*** ուսմունքը՝ կիրառելով տրիադայի վերլուծության մեթոդը: Պ–ի գլխ. երկը՝ «Աստվածաբանության սկզբունքները» («Շաղկապք աստվածաբանականք»), վրաց–ից հայ. է թարգմանել Սիմեոն Պղնձահանեցին (1248)՝ կցելով նաև «Օմելախոսի իմաստասիրի և հռետորի՝ աթենացւոց եպիսկոպոսի «Լուծմունք Պրոկղի Դիադոխոսի՝ պղատոնական իմաստասիրի»» մեկնող. աշխ–ը: Պ–ին են վերագրվում նաև «Գիրք պատճառացը» (հայ. հրտ.՝ 1750), որն «Աստվածաբանության սկզբունքների» համառոտությունն է. այն լատ–ից հայ. թարգմանել է Ստեփանոս Լեհացին (1660): Պ–ի երկը մեկնել են Սիմեոն Ջուղայեցին (1651) և Սիմեոն Երևանցին (1750):

ՊՐՈԿԼԵՍ, **Պրոկլես Կոստանդնուպոլսեցի** (մոտ 370–446), բյուզանդացի աստվածաբան և եկեղեց. գործիչ: Կ. Պոլսի պատրիարք (434–446): Աշակերտել է

Հովհան Ոսկերերանին: Նամակագր. կապեր է ունեցել Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի հետ: Պահպանվել են Պ–ի բազմաթիվ ճառերը, ներբողները և դավանաբան. թղթերը: Հայ. թարգմ–յամբ պահպանվել է Պ–ի նամակը՝ «Թուղթ Պրոկղեայ եպիսկոպոսի առ Սահակ հայրապետ Հայոց և առ սուրբն Մաժդոց»: Պ–ի գրվածքների զգալի մասը թարգմանվել է հայ. դեռևս V դ–ում:

ՊՐՈԿՈՆՍՈՒԼ (լատ.՝ proconsul), պետ. պաշտոն Հին Հռոմում: Պ–ներն սկզբում կատարել են զինվ. հանձնարարություններ: ***Պրովինցիաների*** առաջանալուց հետո նշանակվել են կառավարիչ՝ իրավ., վարչ. և զինվ. գերագույն իշխանությամբ: Սովորաբար ընտրվել են 1 տարով:

ՊՐՈԿՈՇԿԻՆ Յուրի Դմիտրևիչ (1929–1997), ռուս ֆիզիկոս: ՌԴԱ ակադ. (1990): Աշխատակիցների հետ փորձով հայտնաբերել է հակահելիում–3–ը, այսպես կոչված սերպուխովյան էֆեկտը, հ–մեզոնը: Լենինյան մրց. (1986):

ՊՐՈԿՈՊ ՄԵԾ, **Պրոկոպ Մերկ** (Prokop Veliký, մոտ 1380–1434), ***տաբորականների*** քաղ. և ռազմ. գլխ. ղեկ–ը Չեխիայում՝ 1426–ից: Հաղթել է Գերմանիայի կայսեր (1426) և կաթոլիկ. ուժերին (1427, 1431): Զոհվել է Լիպանի մոտ:

ՊՐՈԿՈՊԻՈՍ ԿԵՍԱՐԱՑԻ (490–ի և 507–ի միջև–562–ից հետո), հռոմեացի գրող, պատմագիր: 527–ից՝ զորավար Բելիսարիոսի խորհրդականը. մասնակցել է պարսիկների, վանդալների և օստգոթերի դեմ նրա մղած կռիվներին: Հեղինակ է «Հուստիանոսի պատերազմների պատմությունը» (գիրք 1–8), «Հուստինիանոսի կառուցումների մասին» (գիրք 1–6), «Գաղտնի պատմություն» (հայ.՝ 1987) երկերի: Պ. Կ. օգտվել է նաև «Հայոց պատմություն» կոչվող մի աշխ–ից, որը, ենթադրվում է, Փավստոս Բուզանդի երկն է: Պ. Կ–ու աշխ–ները կարևոր տեղեկություններ են պարունակում Հայաստանի, հատկապես՝ բյուզ. մասի V դ–ի վերջի և VI դ–ի սկզբի պատմության, հաս–տնտ., քաղ. վիճակի մասին:

ՊՐՈԿՈՖԵՎ, Ալեքսանդր Անդրեևիչ (1900–1971), ռուս բանաստեղծ: Սոց. աշխ. հերոս (1970): Հեղինակ է «Միջօրե» (1931), «Կարմիր արշալույսների փողոցը» (1931), «Ի պաշտպանություն սիրահարվածների» (1939), «Անդրգետք» (1955), «Ճամփորդության հրավեր» (1960) ժող–ների, ՀՄՊ–ին նվիրված «Ռուսաստան» (1944) պոեմի: ԽՍՀՄ Պետ. (1946), Լենինյան (1961) մրց–ներ:

ՊՐՈԿՈՖԵՎ, Սերգեյ Սերգեևիչ (1891–1953), ռուս կոմպոզիտոր, դաշնակահար, դիրիժոր: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1947): 1908–14–ի նորարար. դաշնամուր. երկերում («Տեսիլք», տոկկատ, 1–ին կոնցերտ, «Սարկազմներ» ևն) նկատելի են ռուս. վաղ ավանգարդի հակառոմանտիկ. գաղափարները: Հեղինակ է «Խաղամոլը» (1916), «Մեր առ երեք նարինջները» (1919), «Հրեղեն հրեշտակը» (1927), «Նշանադրություն մենաստանում» (1940), «Պատերազմ և խաղաղություն» (1943, 2–րդ խմբագրությունը 1952), օպերաների, «Ռոմեո և Ջուլիետ» (1936), «Մոխրոտը» (1944), «Ասք քարե ծաղկի մասին» (1950) բալետների, «Խաղաղության պաշտպանության դիրքերում» (1950) օրատորիայի, «Ալեքսանդր Նևսկի» (1939) կանտատի, սիմֆոնիաների (1917–52), «Պետյան և գայլը» (1936) սիմֆ. հեքիաթի, կոնցերտների, կինոերաժշտության և այլ գործերի: ԽՍՀՄ Պետ. (1943, 1946–ին՝ եռակի, 1947, 1951), Լենինյան (1957, հետմահու) մրց–ներ:

«ՊՐՈԿՏԵՐ ԷՆԴ ԳԵՄԲԼ» (Procter and Gamble) ԱՄՆ–ի, կենցաղ. քիմիայի միջոց–ներ արտադրող աշխարհում առաջին քիմ. ընկ–ը: Հիմնադրվել է 1837–ին:

«ՊՐՈԿՐՈՒՍՏԵՍՅԱՆ ՄԱՀԻՃ», փաստերն արհեստ. չափանիշի հարմարեցնելու իմաստով գործածվող այլաբան. արտահայտություն: Առաջացել է առասպել. Դամաստես ավազակի Պրոկրուստես (բառացի՝ ձգող–երկարացնող) մականունից: Ըստ հուն. դից–յան՝ Պրոկրուստեսը, բռնելով ուղևորներին, պառկեցրել է հատուկ մահճի վրա և խոշտանգել նրանց, եթե զոհը երկար է եղել մահճից, կտրել է նրա ոտքերը, եթե կարճ՝ մարմինը ձգելով հասցրել է մահճի երկ–յանը: Պրոկրուստեսին իր իսկ ձևով սպանել է *Թեսևսը*:

«ՊՐՈՄԵԹԵՅ ԲԱՆԿ» ՓԲԸ, բանկ. կազմյուն ՀՀ–ում: Հիմնադրվել է 1990–ին՝ որպես «Պրոմեթևս» առևտր. բանկ: 2001–ին վերանվանվել է «Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ–ի, 2016–ին վերակազմավորվել է ՓԲԸ–ի, 2017–ից՝ «Էվոկաբանկ»: Ունի 11 մասնաճյուղ ՀՀ–ում: Կենտրոնատեղին՝ Երևանում:

ՊՐՈՄԵԹԵՎՄ, **Պրոմեթեոս** (Prometheus), տիտան հուն. դից–յան մեջ: Օլիմպոսի աստվածներից գողացել է կրակը և փոխանցել մարդկանց, որի համար Զևսը պատժել է նրան՝ գամելով ժայռին ու դատապարտելով հավերժ. տանջանքների: Պ–ին փրկել է *Հերակլեսը*: Պ–ի կերպարն արտացոլվել է գրկ–յան (Էսքիլես, Շելլի) երաժշտության մեջ (Լ. վան Բեթհովեն, Ա. Ն. Սկրյաբին) և կիրառ. արվ–ում:

ՊՐՈՄԵԹԵՎՄ (լատ.՝ Prometheus), Սատուռնի արբանյակներից: Հեռ. մոլորակից՝ 79,1 հզ. *կմ*, ուղեծրի էքսցենտրիսիտետը (արտակենտրոնություն)՝ 0,0022, մոլորակի շուրջ պտտման պարբերությունը՝ 14 *ժ* 42 *ր*: Զևն անկանոն է:


ՊՐՈՄԵԹԻՈՒՄ (Promethium), Pm, տարրերի պարբեր. համակարգի III խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 61, ա. զ.՝ 144,9128, *լանթանիդ* է, ճառագայթաակտիվ, առավել կայուն իզոտոպը՝ ^{145}Pm ($T_{1/2}$ = 18 տարի): Կոչվել է *Պրոմեթևս* տիտանի անունով: Առաջանում է միջուկ. ռեակտորներում ^{235}U իզոտոպի տրոհման ժամանակ: Արծաթափայլ, դեղնավուն մետաղ է, խտ.՝ 7,26 *գ/սմ*^{3}, $t_{հալ.}$՝ 1170°C: ^{147}Pm օգտագործվում է ատոմ. մարտկոցներ պատրաստելու համար, որոնցում տեղի է ունենում *բետա*–ճառագայթման էներգիայի փոխակերպում էլեկտրականի:

ՊՐՈՄԵՏ (Promet) Լիլի (1922–2007), էստոնացի գրող: Էստ. ԽՍՀ վաստ. գրող (1971): Հեղինակ է «Գյուղն առանց տղամարդկանց» (1962), «Աղջիկները՝ երկնքից» (1978) և այլ վեպերի, «Ո՞վ է տարածում անեկդոտները» (1967), «Երկրի չարաճճիությունները» (1977) վիպակների ու պատմվածքների, «Մասրենի» (1987) բանաստեղծությունների ժող–ների, նաև պիեսների, ուղեգրությունների: Հայ. հրատարակվել է «Մի ամսվա ջրանկարներ» (1968) վիպակների ու պատմվածքների ժող–ը:


ՊՐՈՅԵԿՏԻՎ ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ, երկրչփ–յան բաժին. ուսումնասիրում է առարկաների՝ պրոյեկտիվ ձևափոխությունների ժամանակ չփոփոխվող պրոյեկտիվ հատկությունները: Ընդ որում՝ հարթության դեպքում պրոյեկտիվ է այն ձևափոխությունը, որը կարելի է իրականացնել 1 կամ մի քանի կենտր. պրոյեկցիաներով:

ՊՐՈՅԵԿՏՈՐ (լատ.՝ projectio – առաջադգում), **պրոյեկցիոն ապարատ, առաջադգիչ սարք**, օպտիկամեխ. սարք՝ բնօրինակի պատկերն էկրանին պրոյեկտելու համար: Բնօրինակները լինում են թափանցիկ (կինոպրոյեկտոր, դիապրոյեկտոր), անթափանց (էպիպրոյեկտոր), ինչպես նաև երկուսը միաժամանակ (էպիդիապրոյեկտոր):

ՊՐՈՅԵԿՑԻԱ, **առաջադգություն**, տարած. առարկաների պատկերումը հարթության (կամ այլ մակերևույթի) վրա: Կենտր. Պ. առաջանում է, երբ որոշակի O կետից (Պ–ի կենտրոն) դուրս եկող ճառագայթներն անցնում են տվյալ առարկայի բոլոր եզրակետերով և, հատվելով տրված հարթությանը (Պ–ի հարթություն), ստեղծում պահանջվող պատկերը՝ Պ. (նկ. 1):



1



2

Կենտր. Պ. կիրառվում է հեռանկարում: Զուգահեռ Պ–ի դեպքում առարկայի բոլոր կետերից տարվում են որոշակի ուղղության միմյանց զուգահեռ ուղիղներ, մինչև Պ–ի հարթության (ուղղի) հետ հատվելը: AB ուղղի Պ. ab–ն է (նկ. 2): Եթե տարվող ուղիղներն ուղղահայաց են հարթությանը, Պ. կոչվում է ուղղանկյուն (օրթոգոնալ), որը հատուկ նշանակություն ունի գծագր. երկրչփ–յան մեջ:

ՊՐՈՅԵԿՑԻՈՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՍԱՐՔ, նախատեսված է օպտիկ. պրոյեկցիայի եղանակով հեռուստատես. խոշորացված պատկերը մեծ էկրանին (մինչև 200 *մ*^{2}) ստանալու համար: Կիրառում են հաղորդման արդ., ուսուցող. հեռուստատեսության մեջ, լրատվ. համակարգերում:

ՊՐՈՆՅԱ, գետ ՌԴ եվրոպ. մասի կենտրոնում, Օկայի աջ վտակը: Երկ.՝ 336 *կմ*, ավազանը՝ 10,2 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ մոտ 122 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է ստորին հոսանքում: Պ–ի վրա է համանուն ջրամբարը, ափերին՝ Միխայլովը ք–ը:

ՊՐՈՆՅԱՆ (Պարոնյան) Սահակ Բերիացի (1749–1806), կրթ. և եկեղեց. գործիչ, մանկավարժ: ՎնտՄՄ անդամ: Հեղինակ է «Երկրաչափութիւն» (1794), «Եռանկինաչափութիւն» (մաս 1–2, հրտ.՝ 1810) դասագրքերի:

ՊՐՈՆՉԻՇՉԵՎ, Վասիլի Վասիլևիչ (1702–1736), ռուս. ծովագնաց: 1733–ից՝ Կամչատկայի 2–րդ արշավախմբի ջոկատի ղեկ.: Կատարել է Լենա գետի և Հս. սառուցյալ օվկ–ի ափերի 1–ին գործիք. գծահանումը՝ Լենայի ակունքից մինչև Ֆադեյի հրվանդանը (Թայմիրի թ–կղզի), հայտնագործել բլրաշարք (կոչվում է իր անունով) և Բիրանգա լ–ան արլ. մասը: Մահացել է լնդախտից վերադարձի ճանապարհին: Պ–ին ուղեկցել է կինը՝ Տատյանա Ֆեոդրովնա Պրոնչիշչևան (1713–1736)՝ 1–ին կին բևեռ. ճանապարհորդը:

ՊՐՈՇԿԻՆ Ալեքսանդր Անատոլևիչ (ծ. 1940), ռուս. կինոռեժ.: ՌԴ ժող. արտիստ (1995): Նկարահանել է հեռուստասերիալներ («Օլգա Սերգեևնա», 1975, «Ռիսկի ռազմավարությունը», 1978, «Մասնավոր անձ», 1980, «Միխայլո Լոմոնոսով», 1986, «Դոկտոր Ժիվագո», 2005, ևն), գեղ. ֆիլմեր («Հիսուներեքի ցուրտ ամառը...»,

1988, «Տեսնել Փարիզն ու մեռնել», 1993, «Ռուսական խոովություն», 2002, «Հրաշք», 2009, ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1989):

ՊՐՈՊԱՆ, $CH_3CH_2CH_3$, հագեցած ածխաջրածին: Անգույն, անհոտ, այրվող գազ է: Ստացվում է նավթամթերքի կրեկինգից: Օգտագործվում է որպես լուծիչ (օր.՝ նավթամթերքի պարաֆինազերծման ժամանակ), իսկ բուտանի հետ խառնուրդը կենցաղում օգտագործվող հեղուկ գազն է:

ՊՐՈՊԵՐՑԻՈՍ, Սեքստոս Պրոպերցիոս (Sextus Propertius, մ. թ. ա. մոտ 50–մ. թ. ա. մոտ 15), հռոմեացի բանաստեղծ: Պ-ի ազդեցությամբ է ձևավորվել ***elեգերգը***: Պ-ի 92 սիրային եղերերգերի (ամփոփված են 4 գրքում) հիմն. թեման դառնություններով ու վշտով լի բուռն տենչանքն է սիրեցյալի հանդեպ: Նրանից են ազդվել ***Օվիդիոսը*** և մ. թ. I դ-ի բանաստեղծները:

ՊՐՈՊԻԼԵՆ, պրոպեն, $CH_3CH{=}CH_2$, չհագեցած ածխաջրածին: Թույլ հոտով, անգույն գազ է: Խիստ ռեակցիոնունակ է: Ստացվում է նավթանյութերի պիրոլիզով և պրոպանի կատալիտիկ ապահիդրմամբ: Քիմ. արդ-յան կարևոր հումք է: Կիրառվում է գլիցերինի, ակրիլոնիտրիլ, կումոլ, պոլիպրոպիլեն ևն սինթեզելու համար:

ՊՐՈՊԻԼԵՆՕՔՍԻԴ, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 34,3°C: Օգտագործվում է ՄԱՆ-եր, նաև պոլիմերներ սինթեզելու համար: Ծխահարիչ է:

ՊՐՈՊԻՈԼԱԿՏՈՆ, *բետա*–պրոպիոլակտոն, անգույն, սուր հոտով հեղուկ է, $t_{եռ.}$՝ 155°C: Կիրառվում է արյունը, վակցինաները, ֆերմենտները մանրէազերծելու համար, նաև որպես վարակազերծող միջոց և ծխահարիչ:

ՊՐՈՊԻՈՆԱԹԹՈՒ, CH_3CH_2COOH, սուր հոտով, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 141,1°C: Առաջանում է ածխաջրերի խմորման ժամանակ: Պ. և նրա ածանցյալները կիրառվում են հերբիցիդների, բուրավետ նյութերի, պլաստմասսաների սինթեզում, ինչպես նաև որպես սննդամթերքի փչացումը նախազգուշացնող միջոց:

ՊՐՈՊՈԼԻՍ, տես *Ականամոմ*:

ՊՐՈՊՈՒԼՍԻՎ ՈՒԺ (լատ.՝ propulsus – առաջ հրվող), ուղղաթիռների կրող ***պտուտակի*** քարշուժի (որի շնորհիվ իրականացվում է ուղղաթիռի հորիզոն. թռիչքը), պրոյեկցիան հորիզոն. հարթության վրա:

ՊՐՈՍԿՐԻՊՑԻԱՆՆԵՐ (< լատ. proscriptio – բառացի՝ գրավոր հրապարակում), օրենքից դուրս հայտարարված անձանց ցուցակներ Հին Հռոմում: Օգտագործվել են քաղ. պայքարում, անձն. հաշիվներ մաքրելու և հարստանալու (Պ-ում գրանցվածների ունեցվածքը բռնագրավվել է) նպատակով: Կիրառել են ***Սուլլան*** և 2-րդ ***եռապետության*** անդամները:

ՊՐՈՍԿՈՒՐԻՆ Պյոտր Լուկիչ (1928–2001), ռուս գրող: Սոց. աշխ. հերոս (1988): Հեղինակ է «Դառը խոտեր» (1964), «Ճահկատագիր» (1972) վեպերի, «Անունը քո» (1977–88, հայ.՝ 1981), «Հրաժարում» (գիրք 1, 2, 1987, 1990) երկերգության, ժամանակից գյուղը պատկերող «Սև թռչուններ» (1981), «Միջօրեի երազներ» (1983) վիպակների ժող-ների: ՌԽՖՍՀ (1974), ԽՍՀՄ (1979) Պետ. մրց-ներ:

ՊՐՈՍՏԱԳԼԱՆԴԻՆՆԵՐ, ֆիզիոլոգ. ակտիվ նյութեր, որոնք չնչին քանակությամբ արտադրվում են մարդու և կենդանիների մեծ մասի տարբեր հյուսվածքների բջիջներում: Օժտված են տարբեր ֆիզիոլոգ. ազդեցությամբ. առաջացնում են հարթ մկանունքի (հատկապես՝ արգանդի) կծկում, ազդում են արյան ճնշման, ներզատիչ գեղձերի հյութազատության, ջրաաղային փոխանակության ննի վրա: Ցիկլիկ չհագեցած ճարպաթթուներ են: Օգտագործվում են ծննդաբերության հեշտացման, հղիության արհեստ. ընդհատման և այլ դեպքերում:

ՊՐՈՍՏԵՏԻԿ ԽՈՒՄԲ (հուն.՝ prosthetikos – ավելացնող), բարդ սպիտակուցների (նաև ֆերմենտների) մոլ-ների ոչ սպիտակուց. մասը: Կարող է լինել տարբեր քիմ. բնույթի՝ մետաղի ատոմից մինչև նուկլեոտիդներ:

ՊՐՈՎԱՆՍ (Provence), պատմ. մարզ Ֆրանսիայի հվ-արլ-ում՝ Միջերկր. ծովի ափին՝ մեծ մասամբ ֆրանս. Ալպերում: Պ-ի տարածքում են Վերին Ալպեր, Վերին Պրովանսի Ալպեր, Բուշ դյու Ռոն, Վար, մասամբ՝ Վոկլյուզ, Մերձծով. Ալպեր դեպարտամենտները: Գլխ. քաղաքներն են Մարսելը և Էքս ան Պրովանսը: IX դ-ի 2-րդ կեսին թագավորություն էր, X–XV դդ-ում Հռոմ. սրբազան կայսրության կազմում էր, 1481-ին միացվել է Ֆրանսիային և մինչև 1790-ն ունեցել է պրովինցիայի կարգավիճակ:

ՊՐՈՎԱՆՍԱԼԵՐԵՆ, հնդեվրոպ. լեզվաընտանիքի ռոման. ճյուղի լեզու: Մոտ է իսպ-ին, կատալան-ին, պորտուգ-ին: Նոր Պ. ունի 7 բարբառ՝ բուն պրովանսալ., լանգեդոկյան, ակվիտանյան (գասկոնյան) ևն:

ՊՐՈՎԻՆՑԻԱ (լատ.՝ provincia – մարզ), 1. Հին Հռոմին ենթակա տարածքներ: Կառավարել են ***պրոկոնսուլները*** կամ պրոպրետորները: 2. Վտմ Ռուսաստանում (1719–1775), Իտալիայում, Իսպանիայում և այլուր:

ՊՐՈՏԱԳՈՐԱՍ (Protagoras) Աբդերցի (մ. թ. ա. մոտ 485–մոտ 410), հույն փիլ., սոփեստների փիլ. դպրոցի հիմնադիրը: Աթեիստ. հայացքների համար վտարվել է Աթենքից. աստվածների մասին նրա գիրքն այրել են: Հռչակվել է «Մարդը չափանիշն է բոլոր իրերի՝ գոյություն ունեցողների, որ դրանք գոյություն ունեն, և գոյություն չունեցողների, որ դրանք գոյություն չունեն» դրույթով, պնդել գիտելիքի սուբյեկտիվ պայմանավորվածությունը:

ՊՐՈՏԱՋԱՆ (գերմ.՝ Partisane), մետաղե ծայրով տափակ և երկար նիզակ: XVI դ-ում եղել է ***լանդսկնեխտների***, XVII դ-ում՝ միապետների թիկնապահների զենք:

ՊՐՈՏԱՋԱՆՈՎ, Յակով Ալեքսանդրովիչ (1881–1945), ռուս. կինոռեժ.: ՌԽՖՍՀ (1935), Ուզբ. ԽՍՀ (1943) արվ. վաստ. գործիչ: Ռուս. կինեմատոգրաֆիայի սկզբնավորողներից: Նկարահանել է «Պիկովայա դամա» (1916), «Հայր Սերգի» (1918), «Ալելիտա» (1924), «Երեք միլիոնի դատավարությունը» (1926), «Քառասուն-մեկերորդը» (1927), «Մարիհուետներ» (1934), «Անօժիտը» (1937) և այլ ֆիլմեր:

ՊՐՈՏԱԿՏԻՆԻՈՒՄ (Protactinium), Pa, տարրերի պարբեր. համակարգի III խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 91, ա. զ. 231,0359, ***ակտինոիդ*** է, ճառագայթաակտիվ, առավել կայուն իզոտոպը՝ ^{231}Pa ($T_{1/2}$ = 32760 տարի): Անվանումը կազմվել է ***պրո...*** և ***ակտինիում*** (^{227}Ac առաջանում է ^{231}Pa-ի ***ալֆա***-տրոհումով) բառերից: Պ. սպիտակ, արծաթափայլ մետաղ է, խտ.՝ 15,37 $գ/սմ^3$, $t_{հալ.}$՝ 1570°C: Պ. ստանում են ուրանի հանքաքարից:

ՊՐՈՏԱՄԻՆՆԵՐ, ցածրմոլ. սպիտակուցներ, որոնք տարբերվում են հիմնային ամինաթթուների (հատկապես՝ արգինինի) բարձր պարունակությամբ: Պարունակվում են ձկների և թռչունների սպերմատոզոիդների միջուկներում, որտեղ դրանք կապված են ԴՆԹ-ի հետ:

ՊՐՈՏԱՆՕՊԻԱ (< ***պրոտա...***, ***պրոտո***... և ops – աչք), բնածին մասնակի գունակուրություն, երբ բացակայում է կարմիրի ընկալումը: Տես նաև ***Դալթոնիզմ***:

ՊՐՈՏԱՍՈՎ, Վիկտոր Դմիտրևիչ (1931–1997), ռուս քիմիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1987): Սոց. աշխ. հերոս (1990): Աշխ-ները վերաբերում են նոր տեխնիկայի համար պոլիմեր. կոմպոզիցիաների նյութերի ստացմանը: Լենինյան (1976), ԽՍՀՄ Պետ. (1981) մրց-ներ:

ՊՐՈՏԵԻԴՆԵՐ, բարդ սպիտակուցներ, որոնք պարունակում են ոչ սպիտակուցային՝ պրոստետիկ խումբ: Ըստ վերջինիս քիմ. բնույթի՝ Պ. բաժանվում են նուկլեոպրոտեիդների, լոպոպրոտեիդների, ֆոսֆոպրոտեիդների ևն: Պ. են մի շարք ֆերմենտներ:

ՊՐՈՏԵԻՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, սպիտակուց պարունակող նյութերի (կաթ, արյուն, շիճուկ ևն) ենթամաշկ., ներերակ. կամ միջմկան. ներարկումն օրգանիզմ՝ բուժիչ նպատակով:

ՊՐՈՏԵԻՆԱՄԻԶՈՒԹՅՈՒՆ, պրոտեինուրիա, սպիտակուցի արտազատումը մեզի միջոցով՝ երիկամների ֆունկցիայի խանգարման (երիկամաբորբ, սուր վարակիչ հիվանդություններ, թունավորումներ) և այլ դեպքերում, երբեմն՝ առողջ մարդկանց մոտ՝ ֆիզ. ծանր աշխ. կատարելուց հետո:

ՊՐՈՏԵԻՆՆԵՐ, սպիտակուցներ, որոնք կազմված են միայն ամինաթթուների մնացորդներից: Պ. են մի շարք ֆերմենտներ: Հաճախ Պ. տերմինն օգտագործում են որպես սպիտակուցների հոմանիշ: Տես ***Պրոտեիդներ***:

ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏ (լատ.՝ protector – հովանավոր), պետությունների կախվածության ձև, երբ հովանավորյալ պետությունը միայն ներքին գործերում է պահպանում որոշ ինքնուրույնություն, իսկ նրա արտաքին հարաբերությունները, պաշտպ-յունը վարում է մետրոպոլ պետությունը:

ՊՐՈՏԵՅ, ցուպիկաձև, ոչ սպորակիր շարժուն բակտերիաների սեռ՝ բնականոն աղիք. ֆլորայից: Տարածվում է աղտոտված հողում, ջրում: Կարող է առաջացնել մարդու և կենդանիների թունավարակ., թարախ. հիվանդություններ:

ՊՐՈՏԵՅՆԵՐ (Proteus), պոչավոր երկկենցաղների ընտանիք: Երկ.՝ 16–40 ***սմ***, պոչը եզերված է մաշկ. ծալքով: Արտաքին խոխկները պահպանվում են ամբողջ կյանքում: Բնորոշ է ***նեոտենիան***: Հայտնի է 2 սեռ՝ եվրոպ. Պ. (1 տեսակ, ապրում է Բալկան. թ–կղզու արմ-ում՝ քարանձավ. ջրամբարներում, գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում) և ամերիկ. Պ. (5 տեսակ, ապրում են Հս. Ամերիկայի արլ–ում):

ՊՐՈՏԵՈԼԻԶ, օրգանիզմում սպիտակուցների և պեպտիդների քայքայման ընթացքը, որը կատալիզվում է հատուկ սպիտակուցներով: Կարևոր դեր է խաղում սննդի սպիտակուցների յուրացման ընթացքում, արյան մակարդման, աճման ժամանակ՝ պաշար. սպիտակուցների ակտիվացման և այլ շարժընթացներում:

ՊՐՈՏԵՈԼԻՏԻԿ ՖԵՐՄԵՆՏՆԵՐ, պրոտեազներ, հիդրոլազների դասի ֆերմենտներ. կատալիզում են բջջ. և սննդի սպիտակուցների պեպտիդային հիդրոլիզը, սննդի սպիտակուցների մարսումը: Մի շարք Պ. ֆ. սինթեզվում են ոչ ակտիվ

նախաֆերմենտների տեսքով: Օգտագործվում են բժշկության, թեթև և սննդի արդ–յան մեջ:

ՊՐՈՏԵՐՈԶՈՅ (< հուն. proteros – ավելի վաղ և zoe – կյանք), մինչքեմբրի վերին շերտագր. ստորաբաժանումն ու նրան համապատասխանող երկրբ. ժամանակաշրջանի միջակայքը: Հաջորդում է ***արխեյան դարաշրջանին:*** Տևողությունը՝ 1965 մլն տարի (2500 մլն–ից մինչև 535± 1 մլն տարի առաջ): Տարբերում են վերին և ստորին Պ.: Բնորոշ են ցիանամանրէների կենսագործունեության արդյունքների կուտակումը, մանրադիտակ. սնկերի, բազմաբջիջ բույսերի և կենդանիների (սնկերի) առկայությունը ևն: Պ–ի վերջում (վենդ) տարածվել են անողնաշար բազմաբջիջ օրգանիզմների ֆաունաները: Ներառում է տեկտոգենեզի բազմաթիվ դարաշրջաններ (հուդզոնյան, գրենվիլյան, բայկալյան ևն):

ՊՐՈՏԻՍՏՈԼՈԳԻԱ (հնացած) (< հուն. protistos – ամենաառաջինը և ...*լոգիա*), գիտ–յուն միաբջիջ օրգանիզմների (պրոտիստներ) մասին, որոնց XIX դ–ում առանձնացրել են որպես ինքնուրույն թագավորություն (բակտերիաներ, նախակենդանիներ, մի շարք ջրիմուռներ և սնկեր):

ՊՐՈՏԻՈՒՄ (լատ.՝ Protium), ^{1}H, ջրածնի կայուն և առավել տարածված (99,98 %) իզոտոպը, զանգված. թիվը՝ 1: Պ–ի ատոմի միջուկը ***պրոտոնն*** է:

ՊՐՈՏՈԳՐԱՖ, աղբյուրագիտ–յան մեջ նախն. ձեռագիրը, որն ընկած է ավելի ուշ ժամանակների ընդօրինակությունների (խմբագրումներ, պատճեններ) հիմքում:

ՊՐՈՏՈԴՅԱԿՈՆՈՎ Միխայիլ Միխայլովիչ (1874–1930), լեռնագործության բնագավառի ռուս գիտնական: Աշխ–ները վերաբերում են լեռն. ճնշման տեսության հարցերին: Մշակել է լեռն. ապարների ամրության սանդղակը:

ՊՐՈՏՈԶՈՅՆԵՐ, կենդանիների ինվազիոն հիվանդություն, որը հարուցում են պարզագույնները, օր.՝ կոկցիդները, տրիխոմոնոզները ևն:

ՊՐՈՏՈԶՈՈԼՈԳԻԱ (նոր լատ.՝ protozoa – նախակենդանի), **նախակենդանաբանություն**, կենդբ–յան բաժին. ուսումնասիրում է միաբջիջ կենդանիները՝ նախակենդանիները: Տես նաև *Պրոտիստոլոգիա*:

ՊՐՈՏՈԿՈԿԱՅԻՆ ՋՐԻՄՈՒՌՆԵՐ, **քլորակոկային ջրիմուռներ**, կանաչ ջրիմուռների դաս, միաբջիջ և գաղութ. մտրակազուրկ օրգանիզմներ: Բազմացումն անսեռ է (սպորներով) և սեռ. (իզոգամիա): Հիմնականում ապրում են քաղցրահամ ջրամբարներում և հողում (օր.՝ քլորելան և սցենեդեսմուսը):

ՊՐՈՏՈՆ (հուն.՝ protos – առաջին) (p), կայուն, դրական լիցքով տարր. մասնիկ, սպինը 1/2 է, զանգվածը՝ մոտ 1836 էլեկտրոնի զանգված ($\approx 10^{-24}$ *գ*), ***բարիոն*** է, ջրածնի թեթև իզոտոպի ատոմի միջուկը: Նեյտրոնների հետ կազմում է բոլոր ատոմների միջուկները:

«ՊՐՈՏՈՆ», 1. ԵԱՀ–ի սերիա տիեզ. տարածության ուսումնասիրության համար: Արձակվել է ԽՍՀՄ–ում 1965–68–ին: Առյգն զանգվածը՝ 17 *տ*: 2. Հեղուկ վառելանյութով բազմաստիճան տանող հրթիռ: ԽՍՀՄ–ում կիրառվել է «Վեներա», «Զոնդ», «Մարս», «Սալյուտ», «Պրոտոն» և այլ տիեզ. սարքեր ուղեծիր դուրս բերելու համար:

ՊՐՈՏՈՆԱՅԻՆ ՌԱԴԻՈԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ, ատոմի միջուկի ինքնակամ տրոհման ժամանակ ***պրոտոնի*** արձակումը:

Հնարավոր տեսակները. 1. β – տրոհման կամ էլեկտրոնի զավթման հետևանքով գրգռված միջուկների ուշացած պրոտոնների առաքումը: 2. Միջուկ. իզոմերների պրոտոն. տրոհումը: 3. Նեյտրոն. պակասորդով միջուկների պրոտոն. տրոհումը: 4. Պրոտոններով գերհագեցած և զույգ թվով պրոտոններ պարունակող միջուկները կարող են պրոտոնների զույգման հաշվին դառնալ անկայուն և արձակել միաժամանակ 2 պրոտոն:

ՊՐՈՏՈՊԼԱԶՄԱ (< *պրոտո*... և հուն.՝ plasma – ձեվված, ձևավորված), կենդանի նյութ, կենդանի բջջի պարունակությունը (ներառյալ բջջապլազման ու կորիզը): Եզրույթը (առաջարկել է Յ. Պուրկինյեն) լայնորեն կիրառվել է XIX դ–ում և XX դ–ի սկզբին, գրեթե չի օգտագործվում ժամանակակից գիտ. գրկ–յան մեջ:

ՊՐՈՏՈՊԼԱՍՏ (< *պրոտո*... և հուն.՝ plastos), բուս. բջջի պարունակությունը. կազմված է բջջաթաղանթից, բջջապլազմայից և կորիզից, սակայն արտաքին բջջաթաղանթ չունի: Պ. ստանում են արհեստականորեն՝ կլորնավորման և նրանցից բջջ. ճարտարագիտ–յան մեջ օգտագործվող ամբողջ. բույսեր վերականգնելու համար:

ՊՐՈՏՈՏՐՈՖՆԵՐ (< *պրոտո*... և հուն.՝ trophe – սնունդ, սնուցում), միկրոօրգանիզմներ, որոնք իրենց զարգացման համար պատրաստի վիտամիններ, ամինաթթուներ կամ ածման այլ գործոններ չեն պահանջում, այլ դրանք սինթեզում են հանք. կամ օրգ. միացություններից: Տես նաև *Աուքսոտրոֆներ*:

ՊՐՈՐՈԿՈՎ Բորիս Իվանովիչ (1911–1972), ռուս. գրաֆիկ: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1971): ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի թղթ. անդամ (1954): Ստեղծել է հրապարակախոս. արտահայտիչ նկարաշարեր («Հանուն խաղաղության», 1950, «Դա չպետք է կրկնվի» 1958–59, ևն): ԽՍՀՄ Պետ. (1950, 1952), Լենինյան (1961) մրց–ներ:

ՊՐՈՑԵՍՈՐ, համակարգչի (կամ հաշվիչ համակարգի) կենտր. սարքավորումը, որը կատարում է տեղեկույթի ձևափոխման ծրագրով տրված թվաբ. և տրամաբ. գործողություններ, կառավարում է հաշվման գործողությունները և համակարգում սարքավորման կցասարք–հանգույցների (հիշող, տեսակավորող, մուտքի–ելքի, տվյալների նախապատրաստման ևն) աշխ–ը: Հաշվիչ համակարգում կարող են լինել մի քանի զուգահեռ աշխատող Պ–ներ, այդպիսի համակարգերը կոչվում են բազմա–Պ–ային: Մի քանի Պ–ների առկայությունն արագացնում է 1 մեծ կամ մի քանի (այդ թվում՝ փոխկապակցված) ծրագրերի կատարումը: Ժամանակակից Պ–ները 1 կամ մի քանի ինտեգրալ. սխեմաների համալիր են:

ՊՐՈՑԻՈՆ, α **Փոքր Շան**, 0–ական *ա. մ.* աստղ, երկակի ֆիզ. աստղ է:

ՊՐՈՔՍԻՄԱ ԿԵՆՏԱՎՐՈՍԻ, Արեգակն. համակարգին ամենամոտ աստղը, հեռ.՝ 4,16 լուսատարի, տեսանելի *ա. մ.*՝ 11: Պատկանում է α Կենտավրոսի եռակի աստղ. համակարգին:

ՊՐՈՖԱԳ (< *պրո*... և phagos – խժռողներ), բակտերիոֆագի ներբջջ. ոչ վարակ. ձև. բնորոշվում է ԴՆԹ–ֆագի և տեր–բջջի միացումով: Պ. ախտածին չէ բակտերիային բջջի համար և վերարտադրվում է նրա քրոմոսոմի հետ միաժամանակ: Որոշ պայմաններում կարող է առաջացնել բակտերիայի լուծում:


ՊՐՈՖԱՋ, բջջի կիսման 1–ին փուլը: Բնորոշվում է քրոմոսոմների խտացմամբ և պարուրավորմամբ, կորիզաթաղանթի քայքայմամբ և բջջ. կիսման ապարատի ձևավորմամբ: Տես նաև *Միտոզ*:

ՊՐՈՖԵՍՈՐ (լատ.՝ professor – դասատու), գիտ. կոչում, բուհի դասախոսի կամ գիտ. հիմնարկի աշխատակցի պաշտոն: Առաջին անգամ գործածվել է XVII դ–ում Օքսֆորդի համալսարանում: Եվրոպ. մի շարք երկրներում (Ավստրիա, Բելգիա, Գերմանիա, Սլովենիա ևն) Պ. են անվանում նաև հանրակրթ. դպրոցի ուսուցիչներին:

ՀՀ–ում Պ–ի կոչում շնորհում է ԲՈՀ–ը՝ բուհերի և ԳՀՀ–ների գիտխորհուրդների միջնորդությամբ՝ այն անձանց, որոնք ունեն գիտ–յունների դ–րի գիտ. աստիճան, հեղինակ են գիտ. աշխ–ների կամ հայտնագործությունների, մանկավարժ. աշխ–ի փորձառություն:

ՊՐՈՖԵՐՄԵՆՏՆԵՐ, **նախաֆերմենտներ**, ֆերմենտների ոչ ակտիվ նախորդները: Պ–ի ձևով առաջանում են մի շարք պրոտեոլիտիկ ֆերմենտներ (օր.՝ պեպսինը՝ պեպսինոգենի ձևով, որը կանխում է բջիջների և հյուսվածքների քայքայումը, որոնցում իրականանում է այդ ֆերմենտների կենսասինթեզը:

ՊՐՈՖԻԼ մետաղական, տարբեր երկրչփ. հատույթով մետաղ. արտադրանք, որ պատրաստվում են թերթավոր մետաղի գլոցմամբ, մամլմամբ, գրտնակներով ձևավորմամբ: Օգտագործվում են որպես շինանյութ: Հայտնի է ապրանք. մետաղագլոցվածք անունով:



Որոշ մետաղական պրոֆիլներ. 1. քառակուսի, 2. կլոր, 3. շերտավոր, 4. անկյունավոր, 5. երկպավրային, 6. շվելերային, 7. երկաթգծային ռելս, 8. ագուցային, 9. շպունտային

«ՊՐՈՖՄԵԴԻԱ», ռուս. մեդիահոլդինգ: Կազմավորվել է 1997–ին: Գործում է հեռուստաշուկայում («2 x 2», «Rambler TV», «TV3», «MTV Ռոսիա», «VH 1 Ռոսիա»), համացանցում (AdMarket.ru, Afisha.ru, E–xecutive.ru, Rombler Media, 101.ru), ռադիոշուկայում («Ավտոռադիո», «Ռադիո ENERCY», «Հումոր FM», «Ռադիո Ալլա»), ներառում է նաև պարբ–ների տարածման «Մամուլն այսօր» ընկ–ը, «Յենտրալ Պարտնյորշիպ» կինոմիավորումը ևն:

ՊՐՈՒԴԿԻՆ Մարկ Իսահակովիչ (1898–1994), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1961): Սոց. աշխ. հերոս (1989): 1924–ից՝ ՄԳԱԹ–ի դերասան (Շերվինսկի՝ Մ. Ա. Բուլգակովի «Տուրբինների օրերը», Վռոնսկի՝ «Աննա Կարենինա», ըստ Լ. Ն. Տոլստոյի, Ֆեոդոր Կարամազով՝ «Կարամազով եղբայրներ»՝ ըստ Ֆ. Մ. Դոստոևսկու, նաև նույնանուն ֆիլմում, ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1947, 1949):

ՊՐՈՒԴՆԻԿՈՎ Վիկտոր Ալեքսեևիչ (ծ. 1939), ռուս. զորապետ, բանակի գեն. (1996): 1975–ից՝ ՀՕՊ դիվիզիայի, 1983–ից՝ ՀՕՊ–ի առանձին բանակների (1978–ից՝ 1–ին տեղակալ), 1989–ից՝ Մոսկվայի ՋՕ–ի ՀՕՊ զորքերի, 1991–ի սեպտ–ից՝ ՀՕՊ զորքերի գլխ. հրամ., ԽՍՀՄ պաշտպ–յան նախարարի տեղակալ: 1992–97–ին՝ ՌԴ ՀՕՊ զորքերի գլխ. հրամ.: 1997–2001–ին՝ ԱՊՀ մասնակից երկրների ռազմ. համա–

գործակցությունը համակարգող շտաբի պետ: ՌԻ Պետ. մրց. (1995):

ՊՐՈՒԴՈՆ (Proudhon) Պիեռ Ժոզեֆ (1809–1865), ֆրանսիացի սոցիալիստ, անարխիզմի տեսաբան, տնտեսագետ: Պրուդոնիզմի հիմնադիրը: Քարոզել է հաս-յան խաղաղ վերակառուցման գաղափարներ, առաջադրել է «Ժողովրդական բանկի» հիմնադրման գաղափար, որի նպատակը մանր ձեռն-ների արտադրանքի փոխանակման համար համարժեք անհատույց վարկ հատկացնելն է: Հեղ-յան (1848) շրջանում առաջ է քաշել դասերի տնտ. համագործակցության և «պետության լուծարման» անարխիստ. տեսություններ:

ՊՐՈՒԴՈՆԻԶՄ, **պրուդոնականություն**, *Պրուդոնի* տնտեսագիտ., փիլ-յան և սոցիոլոգ. հայացքների վրա հիմնված սոցիալիզմի տարատեսակ: Առաջարկել է մանր սեփականության հաստատման և պետության խաղաղ լուծարման նախագծեր: Ըստ Պ-ի՝ շահագործումը կարելի է վերացնել՝ բարեփոխելով փոխանակության ոլորտը, կազմակերպելով ոչ դրամ. փոխանակություն և անտոկոս վարկ:

ՊՐՈՒԶԻՆԵՐ (Prusiner) Սթենլի (ծ. 1942), ամերիկացի կենսաքիմիկոս: Հայտնագործել է *պրիոնները*: Հաստատել է պրիոնային սպիտակուցների ամինաթթվային հաջորդականությունը և նույնականացրել նրա գենը: Նոբելյան մրց. (1997):

ՊՐՈՒԽԱ (Průcha) Յարոսլավ (1898–1963), չեխ դերասան, ռեժ.: ՉՍՍՀ ժող. արտիստ (1953): Աշխատել է Կլադնոյի (1924–28, 1963–ից՝ Պ-ի անվ.), Պրահայի ազգ. (1931–63) թատրոններում (Վերշինին՝ Ա. Պ. Չեխովի «Երեք քույր», Յան Ժիժկա՝ Ա. Իրասեկի «Յան Ժիժկա», ևն), բեմադրել է Յ. Կ. Տիլի «Կամակոր կինը» և այլ գործեր: Նկարահանվել է կինոյում: ՉՍՍՀ Պետ. մրց. (1951,1952):

ՊՐՈՒՆԱՐԻՈՒ (Prunariu) Դումիտրու (ծ. 1952), ռումին տիեզերագնաց օդաչու, փոխգնդ–ճարտարագետ (1981): Ռումինիայի և ԽՄ հերոս (1981): Ռումինիայի 1-ին տիեզերագնացը: Թռիչքը՝ «Սոյուզ–40» և «Սալյուտ–6» (1981-ի մայիս) ուղեծր. կայանով: Ընդհ. տևողությունը՝ 8 օր:

ՊՐՈՒՆՍԿԵՆԵ (Prunskiene) Կազիմիրա Դանուտե (ծ. 1943), լիտվացի կուս-պետ. գործիչ: Տնտեսագիտ. դ-ր (1987): 1990–91-ին՝ Լիտվայի վարչապետ: 1989–90-ին՝ Լիտվ. ԽՍՀ ՆԽ նախագահի տեղակալ: 2009-ից՝ Լիտվ. ժող. միության կուս-յան նախագահ:

ՊՐՈՒՍ (Prus) Բոլեսլավ (Գլովացկի Ալեքսանդր, 1847–1912), լեհ գրող: Հեղինակ է «Որբի բախտը» (1876) և այլ ռեալիստ. պատմվածքների, «Ամրակետ» (1885) վիպակի, «Տիկնիկ» (1887–89, կինոնկար՝ 1968, հայ.՝ գիրք 1–2, 1975–77), «Ազատագրված կանայք» (1891–93) սոցիալ. հոգեբ. թեմաներով վեպերի, «Փարավոն» (1895–96, կինոնկար՝ 1966, հայ.՝ 1962) պատմավեպի, նաև ֆելիետոնների, գրաքննադատ. և հրապարակախոս. գործերի: Հայ. հրատարակվել են նաև «Մանկութեանս մեղքերը» (1913), «Անհնծված երջանկություն» (1987) գործերը:

ՊՐՈՒՍԵՐԵՆ, *պրուսների* լեզուն: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի բալթ. ճյուղին (XVIII դ–ի սկզբից՝ մեռած): Պ-ով պահպանվել են սակավաթիվ գրավոր տեքստեր, որոնք արձանագրվել են լատ-ի միջոցով:

ՊՐՈՒՍԻԱ. (Preußen), պետություն, ապա՝ երկիր Գերմանիայում (մինչև 1945-ը): Կազմավորվել է *Բրանդենբուրգի* իշխանության և Տևտոն. օրդենի հիման վրա: Բրանդենբուրգ–պրուս. իշխանությունը 1701-ին դարձել է Պ-ի թագավորություն (մայրաքաղաքը՝ Բեռլին): Հոհենցոլեռնների հարստության պրուսացի թագավորները (Ֆրիդրիխ II և ուր.) XVIII–XIX դդ–ի 1-ին կեսին զգալիորեն ընդարձակել են պետության սահմանները: 1871-ին պրուս. յունկերությունը Օ. *Բիսմարկի* գլխավորությամբ ավարտել է Գերմանիայի միավորումը՝ Պ-ի գերակա դիրքով: Պ-ի թագավորը դարձել է Գերմանիայի կայսր: Գերմանիայում 1918-ի Նոյեմբ. հեղ-յան հետևանքով տապալվել է միապետությունը Պ-ում. այն դարձել է գերմ. երկրներից մեկը: ԵՀՊ-ում Գերմանիայի ջախջախումից (1945) հետո Պ. բաժանվել է առանձին երկրների: 1947-ին պրուս. պետությունը վերացվել է:

ՊՐՈՒՄՆԵՐ, բալթ. ցեղերի խումբ՝ բնակեցված Բալթիկ ծովի հվ. ափերի մի մասում: 1283-ին *Տևտոնական օրդենը* լիովին նվաճել է Պ-ի հողերը: Պ-ի անունով է կոչվել *Պրուսիան*:

ՊՐՈՒՍՏ (Proust) Ժոզեֆ Լուի (1754–1826), ֆրանսիացի քիմիկոս: Կ. *Բերթոլեի* հետ երկարատև բանավեճի ընթացքում (1800–08) հաստատել և ձևակերպել է քիմ. միացությունների բաղադրության հաստատունության օրենքը, որով քիմ. միացությունների քանակ. ուսումնասիրությունների սկիզբն է դրել:

ՊՐՈՒՍՏ Մարսել (1871–1922), ֆրանսիացի գրող: Հեղինակ է «Զվարճանքներ և օրեր» (1896) նովելների ժող–ի, «Կորուսյալ ժամանակի որոնումներում: Սվանի ուղղությամբ» (հ. 1–16, հրտ.՝ 1913–27, հայ.՝ 2016) վիպաշարի (ամփոփում է 7 վեպ), որտեղ ուշադրություն հրավիրելով ժամանակի և տարածության սուբյեկտիվ ընկալման և, հատկապես, «ակամա հիշողության» վրա՝ փորձել է վերաստեղծել մարդկանց անցած ժամանակը, աշխարհի ու հաս-յան մասին նրանց պատկերացումների ոչհավաստիությունը:

ՊՐՈՒՏ Իոսիֆ Լեոնիդովիչ (1900–1996), ռուս. սցենարիստ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1983): Հեղինակ է «Տասներեքը» (1937, Մ. Ի. Ռոմմի հետ), «Իմ սեր» (1940), «Շրջկոմի քարտուղարը» (1942), «Պատահար եֆրեյտոր Կոչետկովի հետ» (1955), «Արևածագից մեկ ժամ առաջ» (1973) և այլ կինոսցենարների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942, 1950):

ՊՐՈՒՏ, գետ Ուկրաինայում, մասամբ՝ Մոլդովայի և Ռումինիայի սահմանով, Դանուբի ձախ վտակը: Երկ.՝ 967 *կմ*, ավազանը՝ 27,5 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 69,2 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է 390 *կմ*:

ՊՐՈՒՏՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔ, 1710–13-ի ռուս-թուրք. պատերազմի ժամանակ: 1711-ի մայիս–հունիսին ռուս. բանակը *Պետրոս I*-ի հրամանատարությամբ մտել է Մոլդովա, սակայն շրջապատվել է (Յասսիից հվ–արլ.) թուրք. գերակշռող ուժերով: Պետրոս I-ին հաջողվել է կնքել Պրուտի հաշտությունը (1711), որով Ռուսաստանը Թուրքիային է վերադարձրել Ազովը, պարտավորվել է Տագանռոգում պայթեցնել բերդը ևն: Թուրքիան խոստացել է իր տարածքից վտարել Շվեդիայի թագավոր Կառլ XII-ին:

ՊՈՒ ՍՈՒՆԼԻՆ (Լյան Չժայ, 1640–1715), չին գրող: Հեղինակ է «Պատմություններ Լյաոյի աշխատասեղնյակի հրաշքների մասին» նովելների (մոտ 500) ժող–ի, որտեղ մտացածինը զուգադրել է սոցիալ. քննադատության հետ:

ՊՈՒԱՍՅԵՅԼ, **Պուազել** (Poiseuille), Ժան Լուի Մարի (1799–1869), ֆրանսիացի բժիշկ և ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են շնչառության, արյան շրջանառության ֆիզիոլոգիային: Առաջինն է կիրառել (1828) անդիկ. ճնշաչափը՝ կենդանիների արյան ճնշումը չափելու համար: Փորձարար. ճանապարհով հաստատել է հեղուկի արտահոսքի օրենքը: Տես նաև *Պուազեյլի օրենք*:

ՊՈՒԱՍՅԵՅԼԻ ՕՐԵՆՔ, անսեղմելի մածուցիկ հեղուկի՝ բարակ գլանաձև խողովակով հոսքի ժամանակ, խողովակի ընդլայն. կտրվածքով 1 *վ*-ում հոսող հեղուկի ծավալը համեմատական է խողովակի երկ-յան միավորի վրա ճնշման տարբերությունը, և նրա տրամագծի 4-րդ աստիճանին, և հակադարձ համեմատական՝ հեղուկի մածուցիկությանը: Օրենքը ճիշտ է միայն լամինար հոսքի դեպքում:

ՊՈՒԱՆԿԱՐԵ (Poincare) Ժյուլ Անրի (1854–1912), ֆրանսիացի մաթեմատիկոս, ֆիզիկոս և փիլ.: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1895): Ռ. *Պուանկարեի* ազգականը: Աշխ-ները վերաբերում են դիֆերենցիալ հավասարումներին, անալիտիկ ֆունկցիաների տեսությանը, տոպոլոգիային, երկն. մեխանիկային, մաթ. ֆիզիկային: «Էլեկտրոնի դինամիկայի մասին» (1905, հրտ.՝ 1906) աշխ-յան մեջ Ա. *Էյնշտեյնից* անկախ զարգացրել է «հարաբերականության կանխադրույթի» մաթ. հետևանքները: Փիլ-յան մեջ՝ կոնվենցիոնալիզմի հիմնադիրը:

ՊՈՒԱՆԿԱՐԵ Ռայմոն (1860–1934), ֆրանսիայի նախագահ՝ 1913–20-ին: 1912–13, 1922–24 և 1926–29-ին՝ վարչապետ: Ժ. Ա. *Պուանկարեի* ազգականը: Քաղաքաց. պատերազմի շրջանում (1917–22)՝ Խորհրդ. Ռուսաստանի դեմ ինտերվենցիայի կազմակերպիչներից: Երկդիմի քաղ-յուն է վարել Հայկ. հարցում:

ՊՈՒԱՆՏԻԼԻԶՄ (ֆրանս.՝ pointiller – կետերով գրել), 1. գեղանկարչության մեջ՝ կանոնավոր, կետ. կամ ուղղանկյուն առանձին վրձնախազերով նկարելու եղանակ. գործածել են նեոիմպրեսիոնիզմի վարպետները: 2. Երաժշտության մեջ՝ XX դ–ում կոմպոզիցիայի մեթոդ, որի դեպքում երաժշտ. հենքն ստեղծվում է հնչյուններից («կետերից»), որոնք իրարից բաժանվում են պաուզաներով կամ թռիչքներով: Պ–ի տեխնիկայի նախահայրն Ա. ֆոն *Վեբեռնն* է: Պ. առավելապես տարածվել է XX դ–ի 2–րդ կեսին:

ՊՈՒԱՍՍՈՆ (Poisson) Սիմեոն Դենի (1781–1840), ֆրանսիացի մաթեմատիկոս, մեխանիկոս և ֆիզիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1826): Աշխ-ները վերաբերում են մաթ. անալիզին, հավանականության տեսությանը, մաթ. ֆիզիկային, տես. և երկն. մեխանիկային, առաձգականության տեսությանը, հիդրոդինամիկային ևն:

ՊՈՒԱՍՍՈՆԻ ԳՈՐԾԱԿԻՑ, **առաձգականության մոդուլ**, ուղիղ ձողի ընդլայն. և երկայն. համեմատ. դեֆորմացիաների հարաբերության արժեքը՝ նրա երկայն. ձգման կամ սեղմման դեպքում՝ Հուկի օրենքի գործողության տիրույթում:

ՊՈՒԱՍՍՈՆԻ ԹԵՈՐԵՄ, հավանականությունների տեսության սահման. թեորեմներից. եթե $x_1, x_2, \ldots x_n$ անկախ պատահական մեծությունները p հավանականությամբ ունեն 1-ին հավասար և 0 արժեք՝ $q = 1 - p$

հավանականությամբ, $0 < p < 1$ և $np \to \lambda > 0$, երբ $n \to \infty$, ապա՝ $p(x_1 + x_2 + \dots x_n = k) \to (\lambda^k / k!)\, e^{-\lambda}$: Հայտնի է նաև որպես **Պուասոնի բաշխում**:

ՊՈՒԱՍՈՆԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄ, մասնակի ածանցյալներով $\Delta u = f$ տեսքի հավասարում, որտեղ Δ-ն Լապլասի օպերատորն է: Առաջինն ուսումնասիրել է Ս. *Պուասոնը*:

ՊՈՒԱՏԻԵ (Poitiers), ք. Ֆրանսիայում, Վիեն դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 85,6 հզ. (2010): Հիմնադրվել է որպես կելտ. բնակավայր՝ մ. թ. ա. I դ–ից ոչ ուշ: Պ–ում պահպանվել են վաղ– և ուշմիջնադար. հուշարձաններ (Սեն Պիեռ ռոման. տաճարը, IV դ., կիսակառույցներ, XIII–XV դդ., ևն):

ՊՈՒԱՏԻԵԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Ֆրանսիայի հնագույն համալսարաններից: Հիմնադրվել է 1431–ին: 2016–ին ուներ շուրջ 23 հզ. ուսանող: Պ. ի–ում են սովորել Ֆ. Բեկոնը, Ֆ. Վիետը, Ռ. Դեկարտը, Ֆ. Ռաբլեն, Օ. Ռեկյուն և ուր.:

ՊՈՒԱՐԵ (Poiret) Պոլ (1879–1944), հագուստի ֆրանսիացի մոդելավորող, նորարար: 1902–ին Փարիզում ստեղծել է սեփ. նորաձևության տուն: Վերացրել է կորսետը, ստեղծել է կրծկալը, ներմուծել նեղ կիսաշրջազգեստը, տաբատ–կիսաշրջազգեստը, կանանց մազերի նոր կտրվածք ևն, առաջինն է (սեփ. ֆիրմայում) ստեղծել «դերձակի օծանելիք»:

ՊՈՒԱՒԶՈՎ Եմելյան Իվանովիչ (1740/42–1775), Դոնի կազակ, 1773–75–ի գյուղաց. ապստամբության առաջնորդ, Յոթնամյա (1756–63) և Ռուս–թուրք. (1768–74) պատերազմների մասնակից: 1774–ի սեպտ–ին ձերբակալվել է, ուղարկվել Մոսկվա և ենթարկվել մահապատժի:

ՊՈՒԳԱՉՈՎԱ Ալլա Բորիսովնա (ծ. 1949), ռուս. երգչուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1991): 1978–ից՝ «Ռուսհամերգի» մենակատարուհի, 1988–ից՝ «Երգի թատրոն» (1992–ից՝ «Ալլա» ֆիրմա) թատրոն–ստուդիայի գեղ. ղեկ.: Երգացանկում՝ ժամանակակից կոմպոզիտորների (այդ թվում՝ Ռ. Պաուլսի), նաև իր երգերից:

Էստրադայի արտիստների միջազգ. մրցույթի 3–րդ մրց. (1974), «Ոսկե Օրփեոս» էստրադ. երգի (1975, Բուլղարիա) և երգի (1978, Սոպոտ, Լեհաստան) միջազգ. փառատոների Մեծ. մրց.: ՀՀ «Սր Մեսրոպ Մաշտոց» շքանշան (2009):

ՊՈՒԳՈ Բորիս Կառլովիչ (1937–1991), լատիշ կուս. և պետ. գործիչ, գեն–գնդ. (1991): 1980–ից՝ Լատվ. ԽՍՀ ՊԱԿ–ի նախագահ, 1984–ից՝ Լատվիայի կոմկուսի ԿԿ 1–ին քարտուղար, 1988–ից՝ ԽՄԿԿ ԿԿ–ին առընթեր կուս. վերահսկողության կոմիտեի նախագահ, 1990–91–ին՝ ԽՍՀՄ ՆԳ նախարար: Մասնակցել է 1991–ի օգոստ. 19–21–ի պետ. հեղաշրջման փորձին, որի ձախողումից հետո ինքնասպան է եղել:

ՊՈՒԳՈՎԿԻՆ Միխայիլ Իվանովիչ (1923–2008), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1988): 1941–ից կինոյում մարմնավորել է սուր բնութագր., կատակերգ. դերեր («Հարսանիք», «Զինվոր Իվան Բրովկին», «Հարսանիք Մալինովկայում», «Տասներկու աթոռ», «Իվան Վասիլևիչը փոխում է մասնագիտությունը», «Բրեմենյան երաժիշտներ» ևն):

ՊՈՒԴԵԼ (հոլ.՝ pudel, pudeln – ճղփացնել ջրում), առավելապես ընկերակից շների ցեղ: Օգտագործվում է նաև որպես բնակարանապահ, կրկես. վարժեցումների համար: Տարբերում են խոշոր (այսպես կոչված թագավոր.), փոքր և գաճաճ Պ–ներ:

ՊՈՒԴՈՎԿԻՆ Վսեվոլոդ Իլլարիոնովիչ (1893–1953), ռուս. կինոռեժ., կինոյի տեսաբան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1948): ԽՍՀՄ կինեմատոգրաֆիայի հիմնադիրներից («Մայրը», 1926, ըստ Մ. Գորկու, «Սանկտ Պետերբուրգի վախճանը», 1927, «Սուվորով», 1941, Մ. Ի. Դուլերի հետ, «Ծովակալ Նախիմով», 1947, «Վասիլի Բորտնիկովի վերադարձը», 1953, ևն): Նկարահանվել է կինոյում («Կենդանի դիակ», «Հանուն հայրենիքի», «Իվան Ահեղ» ևն):

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1947, 1951):

ՊՈՒԵԲԼԱ, (Puebla), ք. Մեքսիկայում, համանուն նահգ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,5 մլն (ագլոմերացիայում՝ 3 մլն, 2010): Կարևոր ագրոն տնտ. կենտրոն է: Զարգացած են մեքենաշինությունը (մարդատար ավտոմեքենա ևն), մետաղագործությունը, ապակու, ցեմենտի արտադր–յունը: Ունի համալսարան, Սանտա Մոնիկա երկրագիտ., «Խ. Լ. Բելիո–Գոնսալես» արվ–ի, Պուեբլա նահանգ. թանգարաններ: Հիմնադրվել է 1531–ին: Կան վանքեր, եկեղեցիներ ևն: Պատմ. կենտրոնը Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՊՈՒԵԲԼՈ (իսպ. – «բնակավայր»), հնդկացի ժողդ–ների խումբ (խոպի, էունի, կերես, տանո) ԱՄՆ–ի Նյու Մեքսիկո և Արիզոնա նահգ–ներում: Թվաքանակը՝ 30 հզ. (2010): Լեզուն՝ խոպի, տանո: Հավատացյալները կաթոլիկ են:

ՊՈՒԵՆՏ ՆՈՒԱՐ (Pointe Noire), ք. Կոնգոյի Հանրապետությունում, Կունուլու մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 671 հզ. (2010): Նվինգստ՝ Ատլանտ. օվկ–ի ափին: Ունի օդանավակայան: Պ. Ն–ի շրջանում արդյունահանվում է նավթ: Հիմնադրվել է 1883–ին:

ՊՈՒԵՐՏՈ ԼԱ ԿՈՒՍ (Puerto la Cruz), ք. Վենեսուելայի Անսոատեգի նահգ–ում: Բն.՝ 372 հզ. (2010): Նվինգստ՝ Կարիբյան ծովի ափին (նավթի և նավթամթերքի տեղափոխում):

ՊՈՒԵՐՏՈ ԿԱԲԵԼՈ (Puerto Cabello), ք. Վենեսուելայում, Կարաբոբո նահգ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 281 հզ. (2010): Նվինգստ՝ Կարիբյան ծովի ափին: Հիմնադրվել է 1589–ին: Մերձակայքում գործում է նավթավերամշակման գործարան:

ՊՈՒԵՐՏՈ ՄՈՆՏ (Puerto Montt), ք. Չիլիի հվ–ում, Լոս Լագոս մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 205,3 հզ. (2010): Ունի փայտամշակման ձեռն–ներ, նավաշինարան: Զարգացած է ոստրեի որսը: Հիմնադրել են գերմանացիները 1853–ին:

ՊՈՒԵՐՏՈ ՌԻԿՈ (Puerto Rico), խորջրյա անդունդ Ատլանտ. օվկ–ում՝ Պուերտո Ռիկո կղզու հս–ում: Խոր.՝ 8742 *մ*:

ՊՈՒԵՐՏՈ ՌԻԿՈ, **Պուերտո Ռիկո Ազատ Միացյալ Պետություն**, «չմիավորված կազմավորված տարածք» Վեստ Ինդիայում, Պուերտո Ռիկո և մերձակա՝ ԱՄՆ–ից կախված կղզիներում: Տարածքը՝ 8,9 հզ. *կմ*^{2}, բն.՝ 3,97 մլն (2009)՝ հիմնականում պուերտոռոիկացիներ: Հավատացյալները կաթոլիկ են: Պետ. լեզուները՝ իսպ. և անգլ.: Վարչ. կենտրոնը՝ ***Սան Խուան***: Վարչականորեն բաժանված են 78 տեղ. ինքնավարությունների:

Արմ–ից արլ. ձգվում է Կենտր. Կորդիլիերա լ–շղթան (բարձր.՝ 1338 *մ*, Պունտա լ.), հս–ի և հվ–ի երկայն. ափերով հարթավայրեր են: Պ. Ռ. Լատ. Ամերիկայի զարգացող փոքր երկիր է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 17,2 հզ. ԱՄՆ դոլար է: Արտահանում է դեղանյութեր, էլեկտրոն. արտադրանք, բժշկ. սարքավորումներ, հագուստ, ռոմ:

Հնագույն ժամանակներից կղզում բնակվել են հնդկացիներ: XV դ–ում այն նվաճել են իսպանացի կոնկիստադորները: Մինչև XVI դ–ի կեսը իսպ. նվաճողները գրեթե ամբողջովին ոչնչացրել են հնդկացիներին և իբրև աշխատուժ Աֆրիկայից բերել սևամորթ ստրուկների: 1898–ին կղզուն տիրել են ամերիկացիները: 1952–ից ԱՄՆ–ի պարտադրած սահմանադրությամբ Պ. Ռ. հռչակվել է «Կամավոր միացած պետություն» (ինքնակառավարման իրավունքի հետ): 2000–ական թթ–ից ԱՄՆ–ի Կոնգրեսի օրակարգում է Պ. Ռ–ի կարգավիճակի ճշգրտման հարցը:

ՊՈՒԵՐՏՈՌԻԿԱՑԻՆԵՐ, ժողդ, *Պուերտո Ռիկոյի* հիմն. բնակչությունը: Թվաքանակը՝ 3,9 մլն (2000), 2,4 մլն ապրում են ԱՄՆ–ում: Հիմնականում մուլատ են և սևամորթ: Խոսում են իսպ–ի տեղ. տարբերակով: Հավատացյալները կաթոլիկ են:

ՊՈՒԶԻՐԻԿՈՎ Վիկտոր Գրիգորևիչ (1918–1999), ուկրաինացի նկարիչ: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1979): Հեղինակ է «Սևծովյան նավաստիներ» (1947), «Չկնորսաշրջան» (1976) ծովանկարների, «Նրանք մարտնչում էին հանուն Հայրենիքի» (1977) և ռազմածով. թեմաներով այլ գործերի: ԽՍՀՄ (1948, 1950), Ուկր. ԽՍՀ (1976) Պետ. մրց–ներ:

ՊՈՒԻԿԼԻՈՒ (Պույըգլյան, Պույըգլիու) Գրիգոր–Միհրդատ Հակոբի (1840–1912), ռումինահայ իրավաբան, բանասեր, արևելագետ: Ուսումնասիրել է հայ–ռում. կապերը: Հայտնաբերել և նյութապես աջակցել է հայկ. որոշ ձեռագրերի [«Մինաս Թոխաթեցու ողբը Վլախաց երկրի հայերին» (ռում., 1895, առաջար.՝ Պ–ի), «Կամենից տարեգիրք», Հ. Տաշյանի կազմած ձեռագրացուցակը ննլ տպագրությանը: Ռումինահայի ակադ–ը հրատարակել է «Գրիգոր Մ. Պուիկլիու, 1840–1912» (1914) գիրքը:

ՊՈՒԼԱՏՈՎ Թիմուր Իսհակովիչ (ծ. 1939), ուզբեկ ռուսագիր գրող: Ուզբ. ԽՍՀ ժող. գրող (1989): Հեղինակ է «Մի քայլիր ճամփեզրով» (1964), «Կաիպի երկրորդ ուղևորությունը» (1969), «Պահակային աշտարակներ» (1970), «Կալվածք» (1975), «Վերջին զրուցակիցը» (1985) վիպակների, «Թարազի կրիան» (1985), «Լողացող Եվրասիան» (1990) վեպերի:

ՊՈՒԼԵՆԿ (Poulenc) Ֆրանսիս (1899–1963), ֆրանսիացի կոմպոզիտոր, դաշնակահար: Հեղինակ է բուֆֆոն. «Թիրեսիոսի ստինքները» (ըստ Գ. Ապոլիների, 1944), ողբերգ. «Կարմելուհիների երկխոսությունը» (ըստ Ժ. Բեռնանոսի, 1953–56), քնարահոգեր. «Ձայն մարդկային» (ըստ Ժ. Կոկտոյի, 1958) օպերաների, նաև կանտատների, կոնցերտների, բալետների, խմբերգերի, ռոմանսների, երգերի և այլ գործերի:

ՊՈՒԼԻՑԵՐ Ժոզեֆ (Pulitzer Joseph, 1847–1911), ամերիկացի հրես հրտ., լրագրող, *«դեղին մամուլ»*–ի հիմնադիրներից: 1883–ին ձեռք է բերել «Նյու Յորք Ուորլդ» (անգլ.) օրաթերթը և 15 տարվա ընթացքում թերթի 15 հզ. տպաքանակը հասցրել 1 մլն–ի: Առաջին անգամ օգտագործել է լրագրող. նոր մոտեցումներ, ստեղծել թերթի նոր ոճ՝ ընթերցողների շրջանակն առավել ընդլայնելու նպատակով: Պ–ի կտակի համաձայն՝ 1911–ին սահմանվել է *Պուլիցերյան մրցանակ*:

ՊՈՒԼԻՑԵՐՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ, ամերիկ. ամենահեղինակավոր պարգևներից, տրվում է գրկ–յան, լրագրության,

երաժշտության և թատրոնի բնագավառներում ձեռք բերված նշանակալի հաջողությունների համար: Սահմանվել է 1911-ին՝ Ժ. *Պուլիգների* կտակի համաձայն. շնորհվում է 1917-ից՝ ամեն տարի մայիսին՝ Կոլումբիայի համալսարանում: Դրամ. չափը՝ 10 հզ. ԱՄՆ դոլար:

ՊՈՒԼԿՈՎՈՅԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ, ՌԴԱ գլխ. աստղադիտարանը: Հիմնադրվել է 1839-ին Ս. Պետերբուրգի մերձակայքում: Հետազոտությունները՝ Արեգակի և աստղերի ֆիզիկա, աստղաչափություն, ռադիոաստղագիտ-յուն, աստղագիտ. սարքաշինություն ևն: Վիկտոր *Համբարձումյանը* սովորել է Պ. ա-ի ասպիրանտուրայում (1928–32), հետագայում աշխատել որպես գիտ. քարտուղար:

ՊՈՒԼՄՈՆՈԼՈԳԻԱ, տես *Թոքաբանություն*:

ՊՈՒԼՈՐՈԶ-ՏԻՖ, հավանմանների (հիմնականում՝ հավերի ու հնդկահավերի) հիվանդություն: Հարուցիչները Salmonella Pullorum gallinarum-ներն են: Բնորոշվում է ստամոքսաղիք. համակարգի և այլ օրգանների, սեռահասուն թռչունների ձվարանի ֆոլիկուլի խանգարումներով: Ճտերի Պ-տ. ունի սուր ընթացք, 60–70 % անկումներ: Առողջացած թռչունները ողջ կյանքի ընթացքում բացիլակիր են (հիվանդությունը փոխանցվում է ձվի միջոցով):

ՊՈՒԼՊԱ, (լատ. pulpa – կակղենի, կակղան), 1. կակղենու ատամի միջուկը, ատամի պսակ. և արմատ. խոռոչների պարունակությունը: 2. Փայծաղի հիմն. զանգվածը:

ՊՈՒԼՊԻՏ, ատամի խոռոչը լցնող հյուսվածքի (կակղենու) սուր կամ քրոնիկ. բորբոքում, սովորաբար՝ ոսկրափուտ. խոռոչից մանրէների ներթափանցման պատճառով: Սուր Պ. ուղեկցվում է ատամի ուժեղ ցավերով:

ՊՈՒԼՍԱՐՆԵՐ (անգլ.՝ pulsars, Pulsating Sourses of Radioemission – ռադիոճառագայթման բաբախող աղբյուրներ), **բաբախիչներ**, իմպուլս. էլեկտրամագնիս. ճառագայթման տիեզ. աղբյուրներ: Հայտնաբերել է Է. *Հյուիշի* խումբը 1967-ին: Հայտնի Պ-ի թիվը ներկայում (2017) գերազանցում է 300-ը: Ճառագայթումը կրկնվում է *վ*-ի 1000-երորդական մասից մինչև մի քանի *վ* ճշտությամբ: Մեծ մասը ճառագայթում է ալիքի *մ*-այինից մինչև *սմ*-ային ընդգրկույթում: Կան նաև օպտիկ., ռենտգեն. և *γ*-ընդգրկույթում ճառագայթող Պ.: Գերիշխող աստղաֆիզ. մոդելի համաձայն՝ Պ. իրենց առանցքի շուրջ պտտվող նեյտրոն. աստղեր են՝ մագնիս. դաշտով, որը թեքված պտտման առանցքի նկատմամբ առաջացնում է երկիր եկող ճառագայթման *մոդուլում*:

ՊՈՒՀՃԻԳԱՆՅԱՆ, Բուջիգանյան, Ազնիվ-Աիդա (ծ. 1945), աշխարհագետ, պատմաբան, ժողովրդագրագետ: Հեղինակ է «Հայերը Ռոն-Ալպյան աշխարհաշրջանում» (1978), «Տեղահանված ժողովուրդ: Նոր սփյուռք (XIX–XX դդ.)» (1982), «Հայերի հասարակական-տնտեսական և քաղաքական դերը Եգիպտոսում XIX դ.» (1983), «Հայերն ԱՄՆ-ում» (1988, բոլորը՝ ֆրանս.) և այլ աշխ-ների:

«ՊՈՒՄԱ», սպորտ. կոշիկ, հագուստ, գույք և օծանելիք արտադրող գերմ. ընկ.: Հիմնադրվել է 1948-ին: Բաժանմունքներ ունի ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Իսպանիայում, Հունկոնգում: Կենտրոնատեղին՝ Հերցոգենաուրախում (Գերմանիա):

ՊՈՒՄԻՊՈՆ ԱԴՈԼՅԱԴԵՏ, *Ռամա IX* (1927–2016), Թաիլանդի թագավորը՝ 1950-ից (փաստացի՝ 1946-ից):

ՊՈՒՅՄԱՆՈՎԱ, (Pujmanová) Մարիա (1893–1958), չեխ գրող: Չեխոսլովակիայի ժող. արվեստագետ (1953): Հեղինակ է «Մարդիկ խաչմերուկում» (1937), «Խաղ կրակի հետ» (1948), «Կյանքն ընդդեմ մահվան» (1952) հակաֆաշիստ. թեմայով եռերգության, նաև «Երգարան» (1939), «Ռաֆայել և Սատելիտ» (1944), «Սիրո խոստովանություն» (1949), «Միլիոնավոր աղավնիներ» (1950) բանաստեղծությունների և այլ ժող-ների, «Ալենի քույրը» (1958) վիպակի, նաև ուղեգր. ակնարկների: Չեխոսլովակիայի Պետ. մրց. (1937, 1948, 1951, 1953, 1955):

ՊՈՒՆԱ, ք. Հնդկաստանի Մահարաշտրա նահանգում: Բն.՝ 3,45 մլն (2010): Ունի օդանավակայան, համալսարան: Բարձր տեխնոլոգ. արտադր-յան կենտրոն է: Պ-ում են Շանվար Պետհ միջնադար. ամրոցի ավերակները:

ՊՈՒՆԻ (Pugni) Չեզարե (Ցեզար, Կեսար, 1802–1870), իտալացի կոմպոզիտոր: 1851-ից՝ Ս. Պետերբուրգի կայսեր. թատրոնում: Հեղինակ է «Էսմերալդա» (1844), «Փարավոնի դուստրը» (1862), «Սապատավոր ձիուկը» (1864) և այլ բալետների, նաև օպերաների, մեսսաների և այլ գործերի:

ՊՈՒՆԻԿՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ, Հռոմի և Կարթագենի միջև՝ Արմ. Միջերկրականում տիրապետություն հաստատելու համար: 1-ին Պ. պ.՝ մ. թ. ա. 264–241-ին, 2-րդը՝ մ. թ. ա. 218–201-ին, 3-րդը՝ մ. թ. ա. 149–146-ին: Խոշորագույն ճակատամարտերն են՝ Մյուլեի (260) և Էգատյան կղզիների մոտ (241)՝ հռոմեացիների հաղթանակները ծովում, Տրազիմենուս լճի (217) և Կաննեի մոտ (216)՝ Կարթագենի հաղթանակը *Հաննիբալի* գլխավորությամբ, Զամայի մոտ (202)՝ հռոմեացիների հաղթանակը Սկիպիոն Ավագի գլխավորությամբ. մ. թ.ա. 149–146-ին հռոմեացիները պաշարել են Կարթագենը և գրավել: Կարթագենի պետության մի մասը տրվել է Նումիդիային, մյուս մասը վերածվել է հռոմ. պրովինցիայի՝ Աֆրիկա անունով:

ՊՈՒՆՈ (Puno), ք. Պերուի հվ-արմ-ում, համանուն դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 128 հզ. (2010): Նվինգստ՝ Մագելանի նեղուցի ափին: Ունի օդանավակայան: Կան նավթաքիմ. և այլ ձեռն-ներ: Պ. Ա.-ում է Պատագոնիայի թանգարանը:

ՊՈՒՇԲՈԼ, (անգլ.՝ pushball, < push – հրել և ball – գնդակ), թիմ. մարզախաղ՝ ծանր գնդակով (տրամագիծը՝ 1,8 *մ*, զանգվածը՝ 20–30 *կգ*)՝ խոտածածկ, դարպասներով դաշտում: Ունի նաև ձիերով խաղալու տարբերակ՝ ձիերով Պ.:

ՊՈՒՇԿԻՆ Ալեքսանդր Սերգեևիչ (1799–1837), ռուս բանաստեղծ, ռուս. նոր գրկ-յան և գր. լեզվի հիմնադիրը: 1836-ին հիմնադրել է *«Սովրեմեննիկ»* ամսագիրը: 1820–24-ին աքսորվել է Ռուսաստանի հվ: Հեղինակ է «Ազատություն» (1817), «Գյուղը» (1817), «Չաադաևին» (1818) և այլ բանաստեղծությունների, «Ռուսլան և Լյուդմիլա» (1820), «Կովկասի գերին» (1820–21), «Բախչիսարայի շատրվանը» (1821–23), «Գնչուներ» (1824) և այլ ռոմանտիկ., Պետրոս Մեծի կյանքին և նրա բարեփոխումներին նվիրված «Պոլտավա» (1828), «Պղնձե հեծյալը» (1833) պոեմների, «Բորիս Գոդունով» (1824–05, հրտ.՝ 1831) պատմ. ողբերգության, «Բելկինի պատմվածքները» (1830) ժող-ի, «Պիկովայա դամա» (1833) վիպակի, «Դուբրովսկի» (1832–33), «Կապիտանի աղջիկը» (1833–36) ռեալիստ. վեպերի, «Տերտերն ու իր Բալդի ծառան» (1830), «Սալթան թագավորի հեքիաթը» (1831) և այլ չափածո հեքիաթների, «Փոքր ողբերգություններ» շարքի (1830-ական թթ., «Մոցարտ և Սալիերի», «Քարե հյուրը» ևն), «Եվգենի Օնեգին» (1823–31) չափածո վեպի, որը ռուս գրկ-յան առաջին ռեալիստ. վեպն է: Մահացու վիրավորվել է մենամարտում: 1829-ին Պ. եղել է Հայաստանում, որի մասին մանրամասն նկարագրություններ կան «Ճանապարհորդություն դեպի Արզրում» (1835, հայ.՝ 1937) գրքում: Պ-ի գործերը հայ. թարգմանվել և հրատարակվել են դեռևս 1890-ական թթ-ից: Թարգմ-յունների մեջ առանձնանում է Հ. Թումանյանի թարգմ. արվ-ը, որը բնագրի ոգու և ոճի գեղ. ճշգրիտ վերարտադրման հրաշալի օրինակ է:

ՊՈՒՇԿԻՆԻ ԼԵՌՆԱՆՑՔ, Բզովդալի *լեռնանցք*, ՀՀ Լոռու մարզում՝ Բազումի լ-շղթայի արլ. մասում՝ 2038 *մ* բարձր-յան վրա: Պ. լ-ով և նրա տակ կառուցված թունելով (երկ.՝ 1830 *մ*) Փամբակի հովիտը կապվում է Լոռու դաշտին: Անվանվել է Ա. Ս. Պուշկինի պատվին, որտեղ նա 1829-ին հանդիպել է Պարսկաստանում սպանված Ա. Ս. Գրիբոյեդովի դին Թիֆլիս տեղափոխող սայլվորներին:

ՊՈՒՇՉԱՐՈՎՍԿԻ Յուրի Միխայլովիչ (1916–2000), ռուս. երկրաբան: ՌԴԱ ակադ. (1984): Աշխ-ները վերաբերում են Եվրասիայի տարածք. երկրբ-յան և տեկտոնիկայի (հատկապես՝ ՌԴ հս-արլ. և Հեռավոր Արևելքի), Արկտիկայի, Խաղաղ օվկ-ի, Ատլանտիկայի ու Հնդ. օվկ-ի կազմության և կառուցվածքի զարգացման, նաև տես. տեկտոնիկայի հարցերին: ԽՍՀՄ (1969) և ՌԴ (1995) Պետ. մրց-ներ:

ՊՈՒՇՉԻՆ Միխայիլ Իվանովիչ (1800–1869), դեկաբրիստ: *Դեկաբրիստների* գործով ուղարկվել է կովկաս. առանձին կորպուս: Մասնակցել է 1826–28-ի ռուս-պարսկ. (հատկապես՝ Սարդարապատի, Երևանի ազատագրմանը), 1828–29-ի ռուս-թուրք. (աչքի է ընկել Կարսի բերդի գրավման ժամանակ) պատերազմներին: Մերձավոր կապերի մեջ է եղել *Ներսես Ե Աշտարակեցու*, Հ. Ալամդարյանի և հայ այլ գործիչների հետ:

ՊՈՒՉԻՆԻԱ, *պուկցինիա* (Puccinia), ժանգասնկերի ցեղ: Հայտնի է մոտ 1800 տեսակ: Բույսերի մակաբույծ է. առաջացնում է *ժանգ* հիվանդությունը:

ՊՈՒՉՉԻՆԻ (Puccini) Ջակոմո (1858–1924), իտալացի կոմպոզիտոր: Օպերայում ընդարձակել է վերիզմի սահմանները («Մանոն Լեսկո», 1892, «Բոհեմ», 1895, «Տոսկա», 1899, «Մադամ Բատերֆլայ»՝ «Չիո-Չիո սան», 1903, «Աղջիկն Արևմուտքից», 1910, «Տուրանդոտ», ավարտել է Ֆ. Ալֆանոն, 1925, ևն): Հեղինակ է նաև սիմֆ. կապրիչչոյի, մեսսայի, կանտատների, կամեր-գործիք. և այլ գործերի:

ՊՈՒՍԱՆ, ք. Կորեայի Հանրապետության հվ-արլ-ում, կենտր. ենթակայության վտմ: Բն.՝ 3,32 մլն (ագլոմերացիայում՝ 4,4 մլն, 2010): Տրանսպորտ. հանգույց է, նվինգստ՝ Կորեայի նեղուցի ափերին (բեռնաշրջանառությունը՝ 243 մլն *տ*, 2007, կա լաստանավ. կապ, նաև Ճապոնիա-

յի և Չինաստանի նվինգատ-ների հետ): Ունի օդանավակայան, մետրո: Միջազգ. առևտրի և ֆինանսաբանկ. խոշոր կենտրոն է: Էլեկտրոն. արդ-յան և նավաշինության առաջատար կենտրոններից է: Մերձակայքում գործում է ԱԷԿ: Որպես նվինգատ՝ հիմնադրվել է 1-ին դ-ում՝ Կայա (Կառակ) անունով:

ՊՈՒՍՍԵՆ (Poussin) Նիկոլա (1594–1665), ֆրանսիացի գեղանկարիչ: Կլասիցիզմի հիմնադիրը եվրոպ. արվ-ում: Ստեղծել է պատմ., դից., կրոն. թեմաներով նկարներ («Տանկրեդ և Էրմինիա», «Արկադիայի հովիվները», երկուսն էլ՝ 1630-ական թթ.): Հեղինակ է նաև բնանկարների («Տարվա եղանակներ», շարք, 1660–64, ևն):

ՊՈՒՍՏՈՎՈՅՏ Վասիլի Ստեպանովիչ (1886–1972), ռուս. ընտրասերումնաբան: ԽՍՀՄ ԳԱ (1964), ՀամԳԱ (1956) ակադ.: Սոց. աշխ. հերոս (1957, 1963): Կատարել է արևածաղկի արդյունավետ ընտրասերում և մշակել սերմնաբուծության հիմունքները: Հեղինակ է արևածաղկի ձիթատու և հիվանդադիմացկուն 20 սորտերի: ԽՍՀՄ Պետ. (1946), Լենինյան (1959) մրց-ներ:

ՊՈՒՍՏՈՎՈՅՏ Վլադիմիր Իվանովիչ (ծ. 1936), պինդ մարմնի ռուս ֆիզիկոս-տեխնոլոգ: ՌԳԱ ակադ. (2006): Աշխ-ները վերաբերում են նոր սերնդի ձայնաօպտիկ. սարքերի պատրաստման տեխնոլոգիայի մշակման հարցերին: ԽՍՀՄ (1974, 1984), ՌԴ (1993, 2006) Պետ. մրց-ներ:

ՊՈՒՏԻՆ Վլադիմիր Վլադիմիրովիչ (ծ. 1952), ռուս պետ. գործիչ, ՌԴ նախագահ, ՌԴ ԶՈՒ Գերագույն գլխ. հրամ., ՌԴ Անվտանգության խորհրդի նախագահ՝ 2000–04, 2004–08 և 2012–ից: 1999-ի օգոստ–2000-ի մայիսին և 2008–12-ին՝ ՌԴ վարչապետ: Տնտեսագիտ. թեկնածու (1997), ԽՍՀՄ ս. վ. վ. (1973, սամբո, 1975, ձյուդո), ՌԴ վաստ. մարզիչ (1998): 1975–90-ին ծառայել է ԽՍՀՄ ՊԱԿ-ում: 1998–99-ին՝ ՌԴ անվտանգության դաշն. ծառայության տնօրեն, միաժամանակ, 1999-ի մարտ–օգոստ-ին՝ ՌԴ Անվտանգության խորհրդի քարտուղար: 2008-ի մայիսից՝ «Եդինայա Ռոսիա» («Միասնական Ռուսաստան») համառուսաստան. քաղ. կուս-յան նախագահ:

ՊՈՒՏՅԱՆԻՆ Եվֆիմի Վասիլևիչ (1804–1883), կոմս (1855-ից), ռուս. ծովակալ (1858): 1822–25-ին կատարել է շուրջերկրյա ճանապարհորդություն: 1852–55-ին՝ հեռարշավախմբի ղեկ., հայտնագործել է Ռավորիմսկի–Կորսակովի կղզիները: Ստորագրել է Ռուս-ճապոն. (1855) և Տյանցզինի (1858) պայմանագրերը: 1861-ին՝ ժող. լուսավորության նախարար:

ՊՈՒՏՆԱՅԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ, մոլդ. ամենավաղ տարեգրությունը եկեղեցասլավն. լեզվով: Կազմվել է Պուտնա վանքում XV դ-ի 2-րդ կես–XVI դ-ի սկզբին: Արտացոլվել են Ստեֆան Մեծի գործունեությունը և այլ իրադարձություններ:

ՊՈՒՏՐԱՄԵՆՏ (Putrament) Եժի (1910–1986), լեհ գրող: Հեղինակ է «Իրականություն» (1947), «Սեպտեմբեր» (1951), «Խաչուղի» (1954), «Նոյյան տապան» (1961), «Խորթ զավակներ» (1963), «Թավուտ» (1966) և այլ վեպերի, «Փախուստ» (1978), «Վերադարձ» (1978) նովելների ժող-ների, «Կես դար» (h. 1–4, 1961–70) հուշագրության: ԼԺՀ Պետ. մրց. (1953, 1955, 1964):

ՊՈՒՏՈՒՄԱՅՈ (Putumayo) (ստորին հոսանքում՝ Իսա), գետ Հվ. Ամերիկայում, Ամազոնի ձախ վտակը: Երկ.՝ 1580 *մ*, ավազանը՝ 123 հզ. *կմ*², ջրի միջին ծախսը՝ 7,2 հզ. *մ*³/վ: Ստորին հոսանքում նավարկելի է:

ՊՈՒՐԱԿ, կանաչապատ ոչ մեծ տարածք բնակավայրերի հրապարակներում, փողոցներում և շենքերի մոտ՝ կարճատև հանգստի և ճարտ. ձևավորման համար: Ճարտ. հորինվածքի կարևոր տարրերը քանդակներն են, շատրվանները, ծաղկանոցները և բարեկարգման այլ հնարքներ: Տես նաև *Պարտեզապուրակային արվեստ*:

ՊՈՒՐԱՆՆԵՐ (սանսկրիտ – հին), հինհնդ. գր. հուշարձաններ, *հինդուիզմի* սուրբ գրքերը: Պահպանված հինավուրց գրքերը I հզ-ամյակի 2-րդ կեսից են: Պ. բովանդակությամբ և ձևով հարում են հինհնդ. էպոսին. պարունակում են լեգենդներ և առասպելներ:

ՊՈՒՐԵՎԴՈՐԺ Դենդեվիյն (1933–2009), մոնղոլ բանաստեղծ: Հեղինակ է «Թեյ տափաստանում» (1973), «Կապույտ ժողովրդի կրակը» (2003) փիլ. և քաղաքաց. թեմաներով ժող-ների, «Կարմիր յուրդի կալանավորը» (2000), «Բողդիխանը հասարակ յուրդից» (2005) փիլ. էսսեների ժող-ների:

ՊՈՒՐԻՆ (Պուրինշ, Purins) Բրունո (1928–2001), լատիշ ֆիզքիմիկոս: Լատվիայի ԳԱ ակադ. (1971, նախագահ՝ 1984–89-ին), ՌԳԱ ակադ. (1987): Աշխ-ները վերաբերում են բարձրադիսպերս փոշիների (տիտանի, ալյումինի ևնի նիտրիդների) ստացման պլազմաքիմ. տեխնոլոգիաներին, մետաղների կատոդ. վերականգնմանը, ջր. լուծույթներից իոնների կորզման էլեկտրաքիմ. եղանակներին:

ՊՈՒՐԻՆ, անգույն, բյուրեղ. նյութ է, $t_{հալ.}$՝ 217°C: Պ. և նրա ածանցյալները՝ *պուրինային հիմքերը*, նուկլեինաթթուների, կոֆերմենտների, ալկալոիդների բաղադրիչներ են:

ՊՈՒՐԻՆԱՅԻՆ ՀԻՄՔԵՐ, *պուրիններ*, բնական ազոտային տարացիկլիկ միացություններ, պուրինի ածանցյալներ՝ ադենին, գուանին, քսանտին ևն: Օրգանիզմներում մասնակցում են նուկլեոտիդների, նուկլեինաթթուների, որոշ ֆերմենտների և այլ կենսաբանորեն ակտիվ միացությունների կառուցման շարժընթացին:

ՊՈՒՐԻՏԱՆՈՒԹՅՈՒՆ (լատ.՝ purus – մաքուր), **մաքրակրոնություն**, *կալվինականության* հետևորդների հաս. շարժում Անգլիայում և Շոտլանդիայում XVI–XVII դդ-ում: Դարձել է XVII դ-ի անգլ. հեղյան գաղ. դրոշը: Պուրիտանների սոցիալ-քաղ. կազմի անհամասեռությունը հանգեցրել է շարժման չափավոր (պրեսբիտերականներ) և արմատ. (ինդեփենդենտներ) հոսանքների առաջացմանը:

ՊՈՒՐԿԻՆԵ (Purkyně), **Պուրկինյե**, Յան Էվանգելիստա (1787–1869), չեխ կենսաբան, բնախույզ, հաս. գործիչ: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1836): Աշխ-ները վերաբերում են ֆիզիոլոգիայի, բջջաբանության, անատոմիայի և սաղմնաբանության զարգացմանը: Հայտնաբերել է ձվաբջջի կորիզը (1825), ներմուծել «պրոտոպլազմա» հասկացությունը, կատարելագործել մանրադիտակ. տեխնիկան: Նկարագրել է հյուսվածաբան. մի շարք կառուցվածքներ, որոնք հետագայում կոչվել են նրա անունով (օր.՝ *Պուրկինեի բջիջներ, Պուրկինեի թելիկներ*):

ՊՈՒՐԿԻՆԵԻ ԲՋԻՋՆԵՐ (Յ. Է. *Պուրկինեի* անունով), ուղեղիկի կեղևի խոշոր նեյրոններ, որոնց աքսոնները դուրս են գալիս նրա սահմաններից: Պ. բ-ի միջոցով իրականանում է ուղեղիկի կեղևի ազդեցությունը նրա շարժիչ կենտրոնների վրա (ուղեղիկի կորիզներ, այդ թվում՝ անդաստակային):

ՊՈՒՐԿԻՆԵԻ ԹԵԼԻԿՆԵՐ (Յ. Է. *Պուրկինեի* անունով), մասնագիտացված մկան. բջիջներ, որոնք դրդումը հաղորդում են սրտամկանի կծկողունակ տարրերին: Նյարդ. թելիկների հետ ապահովում են սրտի ռիթմիկ աշխ-ը:

ՊՈՒՐՈՒՇԱ (սանսկրիտ – մարդ, ամուսին), հնդ. փիլ-յան գլխ. հասկացություններից (սկսած «Մահաբհարատայից» և դաս. հնդ. փիլ-յան համակարգերից), նշանակում է ոգի, գիտակցություն, հոգևոր սկիզբ՝ նրա՝ մատերիայի՝ *պրակրիտիի* բացարձակ հակադրության մեջ, առավել զարգացվել է դաս. սանքյայում:

ՊՈՒՐՈՒՍ (Purús), գետ Պերուում և Բրազիլիայում, Ամազոնի աջ վտակը: Երկ.՝ 3200 *կմ*, ավազանը՝ 365 հզ. *կմ*², ջրի միջին ծախսը՝ 12600 *մ*³/վ: Նավարկելի է:

ՊՈՒՖԵՄԻԴ, հակաջղաձգ. դեղանյութ: Օգտագործվում է էպիլեպսիայի թեթև ընթացող ձևերի բուժման համար: Սինթեզվել և փորձարկվել է ՀՀ ԳԱԱ ՆՕՔԻ-ում: Բժշկության մեջ ներդրվել է 1979-ին:

ՊՈՒՖԵՐ (գենետիկ.), հսկա բազմաթել քրոմոսոմների փքված հատվածները, հայտնաբերվել է որոշ երկթևանիների թքագեղձերում: Պ-ում տեղի է ունենում ՌՆԹ-ի ակտիվ սինթեզ (տրանսկրիպցիա), որի համար, ըստ Պ-ի առաջացման դինամիկայի, ուսումնասիրում են օրգանիզմի զարգացման և տարբերակման մեխանիզմները:

ՊՖԱԼՑ (Pfalz), իշխանություն միջնադար. Գերմանիայում՝ Միջին Հռենոսի շրջանում (XII դ-ից՝ պֆալցկոմսություն, 1356-ից՝ կուրֆյուրստություն)՝ Հայդելբերգ գլխ. ք-ով: 1814–15-ին նրա տարածքի մեծ մասը եղել է Բավարիայի շրջան, 1946-ից՝ Ռայնլանդ–Պֆալց երկրի կազմում (Արմ. Գերմանիա, 1949-ից՝ ԳՖՀ):

ՊՖԱՅՖԵՐ (Pfeiffer) Միշել (ծ. 1958), ամերիկացի կինոդերասանուհի: Տարբեր ժանրերի ֆիլմերում մարմնավորել է «միջին դասին» բնորոշ կերպարներ («Սպիով դեմքը», «Վտանգավոր կապեր», «Ռուսական բաժին», «Ամուսնանալ մաֆիայի հետ», «Սիրո դաշտ» ևն):

ՊՖԵՅՖԵՐ, **Պֆայֆեր,** Ռիխարդ (1858–1945), գերմանացի բակտերիաբան և իմունաբան: Հայտնաբերել է մի շարք բակտերիաներ, նկարագրել (1894, ուր. հետ) խոլերայի վիբրիոնի բակտերիոլիզը՝ առանձնահատուկ իմուն. շիճուկի ազդեցությամբ:

ՊՖԵՖԵՐ (Pfeffer) Վիլհելմ (1845–1920), գերմանացի բուսաբան-ֆիզիոլոգ (1917): ՌԳԱ, Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. (1908-ից) թղթ. անդամ: Հետազոտել է օսմոտիկ. երևույթները և նրանց դերը բույսերի ֆիզիոլոգիայում:

ՊՖԼՅՈՒԳԵՐ (Pflüger) Էդուարդ Ֆրիդրիխ Վիլհելմ (1829–1910), գերմանացի ֆիզիոլոգ: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1894): Էլեկտրաֆիզիոլոգիայի վերաբերյալ հետազոտություններով ձևակերպել է իր անունով կոչված օրենքները:

ՊՖՈՐՅՀԱՅՄ (Pforzheim), ք. Գերմանիայում՝ Բադեն Վյուրտեմբերգ երկրում: Բն.՝ 120 հզ. (2010):



Զ, հայ. այբուբենի 27-րդ տառը, անվանումը՝ ջե: Ունի *գրչագիր*, *երկաթագիր*, *բոլորգիր*, *շղագիր*, *նուրբգիր* տառատեսակները: Հայ-ի առաջնալեզվային լեզվատամնային ձայնեղ բարդ պայթաշփ. բաղաձայն հնչյուն (հնչույթ) է: Թվային արժեքը՝ 900:

ԶԱԲԱՐ (Զաբարյան) Միքայել Ալեքսանդրի (1876–1917), թատեր. գործիչ, իրավաբան, խմբ.: Եղել է «Տիֆլիսկի լիստոկ» (ռուս.) թերթի խմբ., Հայոց դրամատիկ. ընկ-յան վարչության նախագահ, դերասան. խմբի ռեժ.: Հրատարակել է «Հայոց դրամատիկական ընկերութիւնը Թիֆլիսում 1907–08: Տեղեկագիր» (1908) ժող-ը:

ԶԱԲԱՐԼԻ Զաֆար (1899–1934), գրող: Ադրբ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1933): Հեղինակ է «Սևիլ» (բեմ.՝ 1928, կինոնկար՝ 1928), «Ալմաս», «1905 թվականին» (երկուսն էլ՝ բեմ.՝ 1931, ներկայացրել է իր շրջագայությունները Հայաստանում, Վրաստանում և Ղարաբաղում) պիեսների, «Հրո հարսը» (բեմ.՝ 1928) պատմ. դրամայի, նաև երգիծ. բանաստեղծությունների, լիբրետոյի:

ԶԱԳԱՆ (Jagan) Ժանետ Ռոզալի (1920–2009), Գայանայի նախագահ՝ 1997–99-ին: Զ. *Զագանի* կինը: Վարել է նախարար. պաշտոններ:

ԶԱԳԱՆ Չեդդի Բհոեթ (1918–1997), Գայանայի նախագահ՝ 1992–97-ին: Ժ. *Զագանի* ամուսինը: 1953-ին և 1957–64-ին՝ Բրիտ. Գվիանայի 1-ին վարչապետ: Գայանայի ժող. առաջադիմ. կուս-յան (ԺԱԿ) հիմնադիր-առաջնորդներից (1950), 1970-ից՝ քարտուղար:

ԶԱԶ (անգլ.՝ jazz), պրոֆեսիոնալ երաժշտարվ-ի տեսակ: Սկզբնավորվել է ԱՄՆ-ի հվ. նահանգներում 1880-ական թթ-ին. հիմքում ամերիկացի նեգրերի հոգևոր (սպիրիչուելս) և աշխարհիկ (բլյուզ) երգն է, առանցքը՝ իմպրովիզացիան, ռիթմի և հարմոնիկ հենքի (8–12–16 տակտ) պարբերականությունը: Հայկ. Զ. պայմանավորված է ազգ. երաժշտության ռիթմ. և ինտոնացիոն առանձնահատկություններով, ծաղկել է XX դ-ի 2-րդ կեսից: Առաջին Զ-նվագախումբը հիմնադրվել է 1937-ին: Ճանաչված են դաշնակահարներ Լ. Մալխասյանը, Դ. Ազարյանը, Վ. Հայրապետյանը, սաքսոֆոնահարներ Ա. Զաքարյանը, Գ. Գարանյանը, Ա. Հյուսնունցը, կոնտրաբասահարներ Ա. Բակունցը, Ս. Դոլմաջյանը, երգիչներ Է. Մակարյանը, Տ. Հովհաննիսյանը, Արամոն (Ա. Գևորգյան), թմբկահարներ Ռ. Յոլչյանը, Ա. Թութունջյանը, կոմպոզիտորներ Կ. Օրբելյանը, Ե. Երզնկյանը, Մ. Վարդազարյանը, Ա. Մարտիրոսյանը և ուր.:

ԶԱԶ-ԲԱՆԴ (անգլ.՝ jazz-band), ոչ մեծ ջազ-անսամբլ (5–10 կատարողներ): «Զ-բ.» անվանումն ի հայտ է եկել 1915-ին (Թ. Բրաունի «Tom Brown's Dixiland jazz-band» խմբի ազդագրում): ՀՀ-ում գործում են «Թայմ Ռիփորթ», «Արտ Վոյսիս», «Չիկո և ընկերներ» և այլ Զ-բ-ներ:

ԶԱԶ-ՌՈՔ (անգլ.՝ jazz-rock), ուղղություն հանրամատչելի երաժշտության մեջ 1960-ական թթ-ի վերջից՝ սահմանափակված *ջազի* և *ռոքի* միջև: Ջազից ընդօրինակել է իմպրովիզացիոն ոճը, ռոքից՝ էլ. երաժշտ. գործիքներն ու ռիթմիկ առանձնահատկությունները: Ճանաչված ներկայացուցիչներից են Մ. Դեյվիսը, Օ. Քոուլմենը և ուր.: 1970-ական թթ-ին հայտնի էր նաև «ֆյուժն» (անգլ.՝ fusion – խառնուրդ, համաձուլվածք) անվանումով:

ԶԱԹԵՐ, ցեղախումբ. մ. թ. սկզբին բնակվել է *Փենջաբի* արվ. շրջաններում, հետագայում դարձել է փենջաբցիների էթնիկ. հիմքը և մտել սիկհերի համայնքի մեջ: Ժամանակակից Զ. (82,5 մլն, 2012) բնակվում են Հնդկաստանի հս-ում և Պակիստանում:

ԶԱԼԱԼ ԷԴ-ԴԻՆ, Զալալ ադ-Դին Մենգուբերդի (1199–1231), Խորեզմի վերջին շահը՝ 1220-ից: Խորասանում հաղթել է մոնղոլներին, սակայն 1221-ին Ինդոս գետի մոտ պարտվել է Չինգիս խանին և փախել Հնդկաստան: 1225-ի սեպտ-ին 60-հզ-անոց բանակով ներխուժել է Արարատյան դաշտ, գրավել ու ավերել Դվինը, ապա՝ Գանձակը, Լոռին, Տփղիսը: 1227-ի մարտին հայ-վրաց. զորքերը՝ Տփղիսում, իսկ Պռոշ իշխանը Դվինում ջախջախել են Զ. Է-Դ-ի կայազորը: 1228–29-ին ասպատակել է Հայաստանի հվ. և արմ. շրջանները: Իկոնիայի սուլթանության, Կիլիկիայի հայկ. պետության և խաչակիրների միացյալ զորքերը 1230-ի ամռանը Երզնկայի մոտ ջախջախել են նրան: Ամիդի մոտ նոր պարտություն կրելով մոնղոլներից՝ փախել է և սպանվել է Ամիդի լեռներում:

ԶԱԼԱԼԻՆԵՐ, *ջելալիներ*, ապստամբներ Օսմ. կայսրությունում XVI–XVII դդ-ում: «Զ.» անվանումն առաջացել է 1519-ին՝ Թոքաթի ապստամբության ղեկ-ի՝ ոմն Զելալի անունից: Այդ ապստամբությունները մեծ վնաս են հասցրել Օսմ. կայսրության ժողղ-ներին, այդ թվում՝ հայերին:

ԶԱԼԱԼՅԱՆ Արտաշես Սիմոնի (1913–1985), կինոօպերատոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1966): Նկարահանել է գեղ. («Առաջին սիրո երգը», 1958, «Փառքի օղակներ», 1962, «Արտակարգ հանձնարարություն», 1965, «Լուսաբացից մեկ ժամ առաջ», 1973, «Հեղկոմի նախագահը», 1977, ևն), նաև վավերագր. («Ավետիք Իսահակյան», 1971, «Ով կոտրեց ձայնասկավառակը», 1971, «Հայաստանն եմ երգում», 1972, ֆիլմ-համերգ, ևն) և այլ ֆիլմեր: ՀԽՍՀ Պետ. մրց. (1967):

ԶԱԼԻԼ (Զալիլով) Մուսա Մուսթաֆայի (1906–1944), թաթար բանաստեղծ: ԽՄ հերոս (1956, հետմահու): Հեղինակ է քնար. բանաստեղծությունների, պոեմների, «Ալթըն չեչ» («Ոսկեհերը», 1941) և «Իլդար» (1941) օպերաների լիբրետոների և այլ գործերի: Ճաշիստ. բանտում (1942) գրել է «Մոաբիտյան տետր» բանաստեղծությունների շարքը: Մահապատժի է ենթարկվել: Հայ. հրատարակվել է «Հատընտիր» (1959) ժող-ը:

ԽՍՀՄ Պետ. (1948), Լենինյան (1957, երկուսն էլ՝ հետմահու) մրց-ներ:

ԶԱԼԻԼ (Զալիլով) Ռահիմ (1909–1989), տաջիկ գրող: Տաջ. ԽՍՀ ժող. գրող (1979): Հեղինակ է «Անմահ մարդիկ» (1949), «Շուրաբ» (գիրք 1–3, 1959–67) վեպերի, նաև պիեսների (այդ թվում՝ «Վերածնունդ», 1976):

ԶԱԽՋԱԽՅԱՆ Մանվել (1770–1835), բառարանագիր, բանաստեղծ, թարգմանիչ: ՎԱտՄՄ անդամ (1791-ից): 1815–16-ին՝ *«Դիտակ Բիւզանդեան»* պարբ-ի խմբ.: Հեղինակ է «Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ»-ի (1804, համառոտը՝ 1829, «Համառօտ բառարան յիտալականէ ի հայ եւ ի տաճիկ»), «Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական»-ի (1837, հայ երկլեզվյան բառարանագրության լավագույն նմուշներից), նաև բանաստեղծությունների: Թարգմանել է Գ. Գոռացցայի, Ս. Կեսների, Ֆ. Ֆենելոնի և ուր. ստեղծագործություններից:

ԶԱԿԱՐՏԱ (Jakarta, Djakarta), Ինդոնեզիայի մայրաքաղաքը՝ Ճավա կղզում: Բն.՝ 8,43 մլն (արվարձաններով՝ 19,2 մլն, 2010): Ջաբոտաբեկ մեգալոպոլիսի (բն.՝ շուրջ 25 մլն) կենտրոնն է: Հիմնադրվել է որպես Բատավիա ամրոց՝ հոլանդացիների ավերած Ջայակերտայի տեղում 1619-ին:

«ԶԱՀԱԿԻՐ», քաղ., գր., ընկեր. պարբերաթերթ (1948-ից, Կահիրե): 1963-ից՝ հնչակյան կուս-յան հրտ-յուն: Արտոնատեր-խմբ.՝ Հայկ Ժամկոչյան, խմբ-ներ՝ Արշամ Տատրյան, Հրանտ Տատրյան, Այտա Սերովբյան, Սարգիս Պալայան, Ավետիս Սովսեյան:

«ԶԱՀԱԿԻՐ», ազգ., կրոն., տեղեկատու ամսաթերթ (1963–90, Թեհրան): Խմբ.՝ Հայկ Սալաքյան, ապա՝ խմբագրակազմ:

ԶԱՀԱՅԻՆ ՊԱՐՊՈՒՄ, միաէլեկտրոդ ԲՀ պարպում, որը մթնոլորտայինին մոտ

ճնշման պայմաններում ունի մոմի բոցի ձև: Առաջանում է ≥ 1 *ՄՀց* հաճախությունների դեպքում (ավելի հեշտ՝ մեծ կորությամբ էլեկտրոդների վրա):

ՋԱՀԱՆԳԻՐ (1569–1627), Մեծ Մողոլների կայսրության տիրակալ՝ 1605–ից: 1613–ին անգլ. Արևելաինդ. ընկ–ը Ջ–ից ստացել է Սուրաթում առևտրի ավան հիմնելու առաջին ֆերմանը (հրամանագիր): Քաղ. մեծ ազդեցություն է ունեցել Ջ–ի կինը՝ Նուր Ջահանը: Գրել է հիշողություններ («Թյուզուկ–ի–Ջահանգիրի»):

ՋԱՀԻՋ, Աբու Ուսման Ամր իբն Բահր (մոտ 775–868), արաբ գրող, աստվածարան, գիտնական: Հեղինակ է «Գիրք ժլատների մասին» զավեշտ. նովելների ժող–ի, ոճաբանությանը, պատմությանը, քաղ–յանը վերաբերող աշխ–ների:

ՋԱՀՈՒԿՅԱՆ Գևորգ Բեգլարի (1920–2005), լեզվաբան, հայագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1955), պրոֆ. (1958): ՀՀ ԳԱԱ ակադ. (1974, թղթ. անդամ՝ 1968–ից): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1965): Մշակել է հայ–ի պատմ. զարգացման շրջանաբաժանումը, առաջին անգամ հայ–ի նկատմամբ կիրառել է լեզվաժամանակագր. մեթոդը, բնութագրել հայ–ի պատմության նախագրային, հին, միջին և նոր շրջանների հիմն. առանձնահատկությունները ու հայոց լեզվի կառուցվածքի և բառապաշարի պատմ. զարգացումը: Հայ բարբառագիտ–յան բնագավառում ստեղծել է նոր գիտակարգ՝ վիճակագր. բարբառագիտ–յուն: Հեղինակ է «Լեզվաբանության պատմություն» (h. 1, 2, 1960, 1962), «Հայ բարբառագիտության ներածություն» (1972), «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» (1974), «Ընդհանուր և հայ լեզվաբանություն» (ռուս., 1978), «Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան» (1987), «Լեզվի համընդհանուր տեսություն» (անգլ., 2003) և այլ աշխ–ների, «Հայերենն ստուգաբանական բառարանի» (2010), «Բանաստեղծական գիրք» (2001) ժող–ի: Եվրոպայի (1974), ԱՄՆ–ի (1980) լեզվաբ. ընկ–ների անդամ: ՀԽՍՀ Պետ. մրց. (1988):

ՋԱՂԱԹԱՅ (Ջաղաթայ, ծ. թ. անհտ–1242), մոնղոլ խան, Չինգիս խանի 2–րդ որդին, նրա արշավանքների մեծ մասի մասնակից:

ՋԱՂԱՅՊԱՆՅԱՆ Կարինե Ազատի (ծ. 1943), երաժշտագետ: Արվեստագիտ. դ–ր (2001), պրոֆ. (1995): ՀՀ արվ. վաստ. գործիչ (2013): Հեղինակ է «Ազգային խոսքի և երաժշտության ռիթմը» (1986), «Ազգային երաժշտության ռիթմերի հետքերով» (1999, երկուսն էլ՝ ռուս.), «Հայ կոմպոզիտորների կյանքից և ստեղծագործություններից» (հայ., ռուս., 2012) և այլ աշխ–ների: Խմբ՝ **Գայանե Ջ.** (ծ. 1945), դաշնակահարուհի: Նվագացանկում՝ Ա. Խաչատրյանի, Ա. Բարաջանյանի, Հ. Դելլայանի, Տ. Մանսուրյանի և ուր. գործերից: Այսրկովկաս. մրցույթի «Լավագույն կոնցերտմայստեր» (1977, Թբիլիսի), Պ. Կադոշայի անվ. միջազգ. մրցույթի 1–ին (1984, Բուդապեշտ) մրց–ներ:

ՋԱՂԵԹՅԱՆ Գրիգոր Ալեքսանի (ծ. թ. անհտ–1938), պետ. գործիչ, ֆինանսիստ: 1919–ի մայիս–օգոստ–ին՝ ՀՀ ֆինանսների նախարար, 1920–ի դեկտ–ին՝ ՀԽՍՀ պետ. վերահսկիչ, ֆինանսների ժողկոմատի խորհրդի փոխնախագահ: 1921–ի Փետր. ապստամբությունից հետո անցել է Իրան: 1922–ին վերադարձել է և նշանակվել պետբանկի Հայաստանի գրասենյակի կառավարիչ:1931–ից Թիֆլիսում զբաղվել է գր. և թարգմանչ. աշխ–ներով: 1937–ին անհիմն բռնադատվել է, գնդակահարվել: Արդարացվել է 1958–ին:

ՋԱՂԻՆՅԱՆ Նիկոլայ Սերգեյի (1881–1942), ճարտարագետ–տեխնոլոգ: 1922–ին Կողբում կառուցել է ջրէկ, 1931–36–ին եղել է «Հայշինտեստի» փոխկառավարիչը, 1936–40–ին՝ Երևանի կառուցվածքնեղի ԳՀԻ փոխտնօրեն, գիտ. ղեկ.:

ՋԱՄԱԼՋԱԴԵ Սեիդ Մոհամմեդ Ալի (1892–1997), պարսիկ գրող: Առաջին նովելագիրն Իրանում: Հեղինակ է «Եղելություններ և մտացածին բաներ» (1921) երգիծ. ժող–ի, «Գալտաշանդիվան» (1945), ինքնակենսագր. «Թե՛ երեսը, թե՛ թարս կողմը նույնն են» (1955) վիպակների, նաև պիեսների:

ՋԱՄԱԼԻ (Տալյան Մկրտիչ Հովհաննեսի, 1848–1922), աշուղ: Շարա *Տալյանի* հայրը: Հեղինակ է հայրենասիր., խրատաբարոյախոս. երգերի, մուհամմանների (ամենամեծ վարպետը հայ բանարվ–ում): Սիր. երգերը գրված են անթերի գր. հայ–ով: Ջ–ի երգերն առաջին անգամ հրատարակվել են 1878–ին՝ «Սոխակ Հայաստանի» երգարանում:

ՋԱՄԱԼՅԱՆ (Իսահակյան) Արշակ (1882–1940), հաս–քաղ., պետ. գործիչ: Մասնակցել է Երզնկայի զինադադարի կնքմանը (1917–ի դեկտ.): 1918–ին՝ ՀՀ դեսպան Թիֆլիսում, 1919–ին՝ զինահավաքման արտակարգ կոմիսար, 1920–ին՝ հաղորդակցության ճանապարհների նախարար: 1920–ի օգոստ. 10–ին Թիֆլիսում ստորագրել է զինադադարի համաձայնագիր Խորհրդ. Ռուսաստանի ներկայացուցիչ Բ. Լեգրանի հետ: Հայաստանի խորհրդայնացումից հետո անցել է Կ. Պոլիս, այնուհետև՝ Ֆրանսիա:

ՋԱՄԲՈԼՈՆՅԱ (Giambologna, Ժան դե Բուլոն, 1529–1608), իտալացի քանդ.: Հարուստ զարդարանքով շատրվանները, արձանները ու հուշարձանները աչքի են ընկնում տարած. կոմպոզիցիաների դինամիկ. ազատությամբ («Ապենինների այլաբանությունը», «Սաբինուհիների առևանգումը», երկուսն էլ՝ 1582):

ՋԱՄԲՈՒԼ (ֆրանս.՝ chambellan – սենեկապետ), *սեղանապետության* գործակալությանը ենթակա պաշտոն Կիլիկյան Հայաստանում: Եղել է արքունի հանդերձապետը և պալատ. հանդեսների կազմակերպիչը: Համապատասխանել է Արշակունյաց ժամանակաշրջանի սենեկապետին:

ՋԱՄԲՈՒԼ ՋԱԲԱԵՎ (1846–1945), ղազախ ժող. բանաստեղծ–ակին: Հեղինակ է «Սուրանշի–բատիր» և «Ուտեգեն–բատիր» և այլ դաստանների, ղազախ ժողդ–ի կյանքի մասին բալլադների, հայրենասիր. բանաստեղծությունների և այլ գործերի: Հայ. հրատարակվել է «Երգեր և պոեմներ» (1938) ժող–ը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941):

ՋԱՄԻ Աբդուռահման Նուրադդին իբն Ահմադ (1414–1492), պարսիկ բանաստեղծ, փիլ.: Ֆարսիով պոեզիայի դաս. շրջանի վերջին բանաստեղծը: Հեղինակ է «Գաղտնիքների ծով» (1475) և «Ոգու շողարձակում» կրոնափիլ. քասիդեների, «Բարեկամության հովեր սրբության օթևանից» (1476–78) վարքագրությունների ժող–ների, նաև «Յոթ թագ» (1472–86) պոեմների շարքի (ընդգրկում է «Սալաման և Աբսալ», «Յուսուպ և Զուլեյխա», «Լեյլի ու Մեջնուն» պոեմները), «Արդարակյացների տերողորմյան» (1482–83), «Ոսկե շղթա» (մաս 1, 1472, 2–3, 1485–86), «Գիրք իմաստության Իսքանդարի» (1486–87, Նիզամիի «Իսքանդարնամե»–ի բանաստեղծ. պատասխանը) միստիկ. պոեմների, նաև 3 քնար. դիվանների (1479–91), «Բահարիստան» (1487) արձակ, «Գարնանային այգի» (1487, Սաադիի «Գուլիստան»–ի բանաստեղծ. պատասխանը), «Տրակտատ երաժշտության մասին» գործերի: Հայ. հրատարակվել է «Լիրիկա» (1964) ժող–ը:

ՋԱՄՄՈՒ ԵՎ ՔԱՇՄԻՐ, նահանգ Հնդկաստանի հս–ում՝ Կարակորումի նախալեռներում: Տարածքը՝ 101,4 հզ. *կմ*², բն.՝ 12,5 մլն (2011): Վարչ. կենտրոնը՝ Սրինագար: Նահանգ–ի մի մասը Պակիստանի վերահսկողության տակ է:

ՋԱՄՆԱ, Յամունա, գետ Հնդկաստանում, Գանգեսի ամենաերկար, աջ վտակը: Երկ.՝ 1384 *կմ*, ավազանը՝ 351 հզ. *կմ*², ջրի միջին ծախսը՝ 2,5 հզ. *կմ*³/*վ*: Նավարկելի է: Ջ–ի ափին են Դելի, Ագրա, Ալլահաբադ ք–ները:

ՋԱՅԱՎԱՐԴԵՆԵ Ջունիուս Ռիչարդ (1906–1996), Շրի Լանկայի նախագահ՝ 1978–89–ին:1977–78–ին՝ վարչապետ:

ՋԱՅԵՎԵՐ (Giaever) Այվար (ծ. 1929), ամերիկացի ֆիզիկոս: Աշխ–ները վերաբերում են էլեկտրոնիկային, գերհաղորդականության, կենսաֆիզիկայի հարցերին: Բացահայտել է թունելային էֆեկտը կիսահաղորդիչներում (1960): Նոբելյան մրց. (1973, Լ. *Էսակիի* հետ):

ՋԱՅԼԱՄՆԵՐ (Struthioniformes), անողնուց թռչունների կարգ: Հայտնի է 1 տեսակ՝ աֆրիկ. ջայլամը, որը ժամանակակից թռչուններից ամենախոշորն է: Մարմնի երկ.՝ մինչև 270 *սմ*, կ. զ՝ մինչև 136 *կգ*: Թևերը թույլ են, թերզարգացած, ոտքերը՝ երկար, ուժեղ, երկմատանի: Տարածված են Աֆրիկայի անտառազուրկ բաց տարածքներում: Տարվել են Հվ. Ավստրալիա, որտեղ հանդիպում են վայրիացած Ջ.: Վերջին տարիներին Ջ. բուծում են նաև ՀՀ–ում:

ՋԱՅՄԻՆԻ, մ. թ. ա. I դ–ի հնդիկ փիլ.: Միմանսայի փիլ. համակարգի հիմնադիրը, «Միմանսա–սուտրայի» հեղինակը:

ՋԱՅՆԻԶՄ (սանսկրիտ՝ Jina – հաղթող), կրոն Հնդկաստանում (շուրջ 3 մլն հետևորդներ): Հիմնադիր Վարդհամանան (մ. թ. ա. VI դ.) հայտնի է նաև որպես Ջինա կամ Մահավիրա: Ջ. մերժել է վեդաների հեղինակությունը, իր համայնք է ընդունել բոլոր կաստաների տղամարդկանց և կանանց: Ջայների նպատակը վերածնություններից (նիրվանա) ազատումն է, որը խստագույն կանոնները պահպանած ճգնավորի (մասնավորապես՝ *ահիմսայի*) համար հասանելի է կենդանի էակներին չվնասելով:

ՋԱՅՊՈՒՐ, ք. Հնդկաստանում, Ռաջաստան նահանգ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 3,2 մլն (2010): Տրանսպորտ. հանգույց է, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի վերամշակման կենտրոն: Հիմնադրվել է 1728–ին:

ՋԱՆ ԼԻՃ, անհոսք լիճ ՀՀ Սյունիքի մարզում՝ Գորիսից 18 *կմ*–ով՝ 2067 *մ* բարձր–յան վրա: Մակերեսը՝ 0,06 *կմ*², միջին խոր.՝ մոտ 4 *մ*:

ՋԱՆԱՆ (Ջանանյան) Մկրտիչ Միհրանի (1892–1938), դերասան, ռեժ., թատեր. գործիչ: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1932): 1922–ին տեղափոխվել է Հայաստան:

1923–36-ին (ընդհատումներով)՝ Հայաստանի Առաջին պետ., Լենինականի դրամատիկ., Երևանի բանվ. թատրոնների դերասան (Օգսեն՝ Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար», Արգան՝ Մոլիերի «Երևակայական հիվանդ», ևն): Երևանի աղրբ. թատրոնի հիմնադիրը (1928, նաև գեղ. ղեկ.): Նկարահանվել է «Խասփուշ» (1927), «Երկու գիշեր» (1932), «Քրդեր-եզդիներ» (1932, երեքն էլ՝ Հայֆիլմ) ֆիլմերում: Անհատի պաշտամունքի զոհ:

ՋԱՆԱՇԻԱ Սիմոն Նիկոլոզի (1900–1947), վրացի պատմաբան, ինագետ: ՎԽՍՀ (1941), ԽՍՀՄ ԳԱ-ների (1943) ակադ.: Աշխ-ները վերաբերում են Վրաստանի ինագիտ-յանը, ինագույն պատմությանը ևն: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943, 1947):

«ՋԱՆԱՍԷՐ», կրոն., գր., հաս. պարբերաթերթ (1937-ից, Բեյրութ): Մերձ. Արևելքի Հայ ավետարան. քրիստ. Ջանից ընկերակցության հրտ-յուն: Խմբ-ներ՝ Բյուզանդ Գալֆայան, Տիգրան Քասունի, Բյուզանդ Ռուպյան, Մանասե Շնորհոքյան, Պարգև Տարագճյան, Եսայի Սարմազյան, Արամ Սարգիսյան, Տիգրան Յումուշաքյան, Երվանդ Քասունի (1991-ից):

«ՋԱՆԳԱՐ», կալմիկ. հերոս. էպոս, որտեղ պատկերված են Բումբա ք-ն ու նրա պաշտպան դյուցազունների սխրանքը: Ենթադրվում է, որ «Ջ.» ստեղծվել է XV դ-ում:

ՋԱՆԳԻԲՈՎ Կարեն Սերգեյի (1948–2014), դերասան: ՀՀ վաստ. արտիստ (2008): 1975–94-ին՝ Երևանի ռուս., փոքրաքար., դրամատիկ., 1982–85-ին և 1996-ից՝ Գ. Սունդուկյանի անվ. թատրոնների դերասան (Ֆիրս՝ Ա. Պ. Չեխովի «Բալենու այգին», Կլարենս՝ Վ. Շեքսպիրի «Ռիչարդ III», Վիրտուոզ՝ Ս. Ստրատիևի «Ավտորուս», Արքա՝ Է. Իոնեսկոյի «Արքան մեռնում է», Ալֆրեդ Իլ՝ Ֆ. Դյուրենմաթի «Ծեր կնոջ այցը», ևն): Նկարահանվել է կինոյում («Քաոս», «Մարդը Օլիմպոսից», «Վանա ծովի արշալույսը», «Թևանիկ», «Եթե բոլորը...» ևն):

Համամիութ. կփ (1975, Քիշնև), միջազգ. կփ «Ունիկա» (2013, Ավստրիա), միջազգ. թատեր. փառատոնի (1989, Սոֆիա), Կ. Ս. Ստանիսլավսկու և Ե. Բ. Վախթանգովի հիմնադրամի գլխ. (1994) մրց-ներ:

ՋԱՆԵԼԻՉԵ Իուստին Իվլիանի (Յուստին Յուլիանովիչ, 1883–1950), վրացի վիրաբույժ: ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1944): ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1936): Սոց. աշխ. հերոս (1945): Բժշկ. ծառայության գնդապետ. (1943): Առաջինն է (1913) հաջողությամբ կարել վերընթաց աորտայի վերքը: Աշխ-ները վերաբերում են վնասվածքաբանությանը, սրտի վիրաբուժությանը, պլաստիկ և անհետաձգելի վիրաբուժությանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950, հետմահու), Լենինի շքանշան (2):

ՋԱՆԻԲԵԿ (ծ. թ. անհտ–1357), *Ոսկե Հորդայի* խան՝ 1341-ից: *Ուզբեկ* խանի որդին: Ընդունել է մահմեդականություն և այն տարածել Ոսկե Հորդայում:

ՋԱՆԻԲԵԿՅԱՆ (Տեր-Խաչատրյան) Գուրգեն Ջանիբեկի (1897–1978), դերասան: ՀԽՍՀ (1938), ԽՍՀՄ (1967) ժող. արտիստ: Կարեն *Ջանիբեկյանի* հայրը: 1924-ից՝ Երևանի Առաջին պետ. թատրոնի դերասան (1965–67-ին՝ նաև տնօրեն): Կերպարներին (Գրիգոր աղա՝ Վ. Փափազյանի «Ժայռ», նաև կինոյում, 1973, Մարգար՝ Ա. Պապայանի «Աշխարհն, այո, շուռ է եկել», Վառավին՝ Ա. Սուխովո-Կոբիլինի «Դատական գործ», Վասկա Պեպել՝ Մ. Գորկու «Հատակում», Սոլոմոն՝ Ա. Միլլերի «Գինը», Քենտ՝ Վ. Շեքսպիրի «Լիր արքա») բնորոշ էր սոցիալ-կենցաղ. ճշգրիտ վերարտադր-յունը: Նկարահանվել է կինոյում («Ամպրոպի արահետով», 1956, «Սարոյան եղբայրներ», 1968, «Հաձան», 1973, երեքն էլ՝ Հայֆիլմ, ևն): Հեղինակ է «Բարեկամներիս մասին» (1965), «Իմ աշխարհից» (գիրք 1, 2, 1977, 1980) հուշագրությունների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1952):

ՋԱՆԻԲԵԿՅԱՆ Կարեն Գուրգենի (1937–2015), դերասան: ՀՀ ժող. արտիստ (2010): Գուրգեն *Ջանիբեկյանի* որդին: 1953-ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. (ընդհատումով), 1991-ից՝ նաև Համազգ. թատրոնների դերասան (Գրիգոր՝ «Հացավան»՝ ըստ Ն. Զարյանի, Քեբոտ՝ Օ՚Նիլի «Սերը ծփիների տակ», Ջոան՝ Վ. Սարոյանի «Մի գավաթ բարություն», Ֆաբիո՝ Դե Ֆիլիպպոյի «Սանիտայի թաղապետը», ևն): Խաղացել է հեռուստաթատրոնում («Մատյան եղելության»՝ ըստ Ս. Խանզադյանի, ևն), նկարահանվել կինոյում («Քաոս», 1973, «Որտե՞ղ էիր, մարդ Աստծո», 1992, երկուսն էլ՝ Հայֆիլմ, ևն): ՀՀ «Սովսես Խորենացի» մեդալ (2009): Որդին՝ Սոս Ջ. (ծ. 1988), դերասան, սցենարիստ, ռեժ.: Նկարահանվել է «Կիսալուսնի ծովածոցը», «Ուրիշի փոխարեն», «Որոգայթ», «Թևանիկ», «Երկրաշարժ», «Կյանքի գինը», «Եղբայրներ», «Դոմինո» (վերջին երեքը՝ հեռուստասերիալ) և այլ ֆիլմերում: Խաղացել է «Թավուտում», «Ոտքի, դատարանն է գալիս» (Սողոմոն Թեհլերյան), Ն. Սայմոնի «Կենտզույգ» ներկայացումներում:

ՋԱՆԻԲԵԿՅԱՆ Մուրադ Վահրամի (ծ. 1956), դերասան: ՀՀ վաստ. արտիստ (2005): 1979–97-ին՝ Երևանի տարբեր թատրոնների, 1983–84-ին և 1997-ից՝ Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասան (Կույր վանական՝ Լ. Շանթի «Հին աստվածներ», Զորավար Անդրանիկ՝ Ռ. Շառոյանի «Մեր բաժին ուրախությունը», Սողոմոն Թեհլերյան՝ Պ. Զեյթունցյանի «Ոտքի, դատարանն է գալիս», ևն): Նկարահանվել է կինոյում («Ձյունե հարսանիք», 1981, Կիևի կինոստուդիա, «Որտե՞ղ էիր, մարդ Աստծո», 1992, Հայֆիլմ, ևն), նկարահանել «Համլետ» (ըստ Վ. Շեքսպիրի, հայ. և անգլ., Համլետի դերում՝ Ջ.) գեղ. ֆիլմը:

Համամիութ. թատեր. փառատոնի գլխ. (1988, Երևան), ՀԹԳՄ «Արտավազդ» (1999), համահայկ. «Վահագն» (2003), միջազգ. կփ (2005, ԱՄՆ) մրց-ներ, ՀՀ «Սովսես Խորենացի» (2013), ՄՆ ոսկե (2003) մեդալներ:

ՋԱՆԻԲԵԿՈՎ Վլադիմիր Ալեքսանդրովիչ (ծ. 1942), ռուս. տիեզերագնաց օդաչու: Ավիացիայի գեն-մայոր: ԽՄ հերոս (1978, 1981): Կատարել է 5 տիեզ. թռիչք՝ որպես անձնակազմի հրամ. (1978, 1981, 1982, 1984, 1985), 2 անգամ (4-րդ և 5-րդ թռիչքների ժամանակ) դուրս է եկել բաց տիեզերք:

ՋԱՆԻԿՅԱՆ Գրիգոր Նազարի (ծ. 1944), գրող, հրապարակախոս, թարգմանիչ: Հեղինակ է «Իսկապես, ինչպիսի՞ն է աշխարհը» (1964), «Մահին հաղթողները» (1968), «Հորիզոնի կանչող գույները» (1975), «Հավերժական ճանապարհ» (1983) պատմվածքների ու վիպակների ժողովների, «Այսպես են ծնվում լեգենդները» (ռուս., 1979), «Եռաբլուր» (2008), «Դարի դեմքը» (2010), «Քանին ու քսան հազարները» (2015) վեպերի: Կազմել և խմբագրել է «Մահապարտները» (2002, ՀԳՄ «Տարվա լավագույն հրապարակախոսական գիրք» մրց.՝ 2002) ժող-ը: Թարգմանել է ամերիկացի և եվրոպացի հեղինակների գործերից: ՀԳՄ Ե. Չարենցի անվ. (1993), ՀԺՄ «Ոսկե գրիչ» (2003) մրց-ներ:

ՋԱՆՅԱՆ (Օհանջանյան) Բոգդան Շամիրի (1917–2010), բանաստեղծ: Հեղինակ է «Իմ լուսաբացը» (1948), «Ես մենակ չեմ» (1964), «Կանչող հեռուներ» (1974), «Իշխանաձորի կանաչը» (1986), «Մի գետ էլ ունենք Տրտու անունով» (1995), «Արցախ իմ, Արցախ» (2004), «Ակունքի մոտ է աղբյուրն աղբյուր» (2010) և բանաստեղծությունների այլ ժող-ների:

ԼՂՀ Եղիշեի անվ. մրց. (1996), «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան (2001):

ՋԱՆՅԱՆ Շահեն Նիկոլայի (1936–2000), ըմբիշ: Մանկավարժ. գիտ. թեկնածու: ԽՍՀՄ ս. վ. (1980), ՀՀ վ. մ. (1966), 1971–74-ին՝ Հայաստանի, 1994–2000-ին՝ Եգիպտոսի ազատ ոճի ըմբշամարտի ազգ. հավաքականների գլխ. մարզիչ:

ՋԱՆՇԻՅԱՆ (Ջանշիև) Գրիգոր Ավետի (1851–1900), ռուսագիր հրապարակախոս, գր. և հաս. գործիչ, խմբ.: Եղել է «Ռուսկիե վեդոմոստի» (ռուս.) թերթի հրտ-խմբ-ներից: Կազմել և հրատարակել է «Եղբայրական օգնություն Թուրքիայի տառապյալ հայերին» (1897, 2-րդ լրց. հրտ.՝ 1898) ժող-ը, որի հասույթով Արմ. Հայաստանում բացվել է 12 մանկատուն: Հեղինակ է «Հայկական հարցը Թուրքիայում» (1893) գրքույկի, «Մեծ բարեփոխումների դարաշրջանից» (հ. 1–2, 1892) պատմահրապարակախոս. աշխ-յան, «Եվրոպայում» (1888), «Բնության ընտրյալների և խորթ զավակների մեջ» (1889) ուղեգր. երկերի:

ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ Կարինե Հենրիկի (ծ. 1962), դերասանուհի: ՀՀ վաստ. արտիստ (2012): Տարբեր տարիների խաղացել է Երևանի փոքրաքար., «Մետրո», «Գոյ», կամեր. երաժշտ., Համազգ. (1992-ից և 2010-ից) թատրոններում (Սոնյա՝ Ա. Պ. Չեխովի «Քեռի Վանյա», Մադլեն՝ «Ֆեյլ»՝ ըստ Ա. Գալինի «Ռետրո» պիեսի, Լուսիա՝ Վ. Շեքսպիրի «Սխալների կոմեդիա», Հարմնի՝ Վ. Սարոյանի «Մի գավաթ բարություն», ևն), հանդես եկել նաև մոնոներկայացումներում (Խ. Չալիկյանի «Ձայլամը ասֆալտի վրա», Կ. Խոդիկյանի «Լույս կրացվի», ևն): Նկարահանվել է կինոյում («Վերջին կիրակին», «Ուրախ ավտորուս», «Արդեն գիտեմ» ևն):

«Աբսուրդ» թատրոնի միջազգ. փառատոնի դափնեկիր (1990, Սարաևո՝ Հարավսլավիա), ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2012), ՀԹԳՄ «Արտավազդ» մրց. (2012):

ՋԱՆՋԱԻՏՈՎԱ Ռոզա Սահակի (1906–1988), կուրորտաբան-ֆիզիոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (1959), պրոֆ. (1963): Հայաստանի բարձրագույն դպրոցի վաստ. գործիչ (1981): 1961-ին ԵԲՌ կուրորտաբանության և ֆիզիոթերապիայի ինստ-ում հիմնադրել է համանուն ամբիոն:

Նպաստել է կուրորտաբան. գործի կազմակերպմանը: ՀԽՍՀ Ան գլխ. մասնագետ (1961–88), ՀԽՍՀ կուրորտաբանների և ֆիզիոթերապևտների գիտ. ընկ-յան նախագահ (1963–88):

ՋԱՆՏՈՇԵՎ Կասիմալի (1904–1968), ղրղզ գրող: Ղրղզ. ԽՍՀ ժող. գրող (1968): Հեղինակ է «Կանիբեկ» (գիրք 1–4, 1939–58), «Երկնային լեռների հովիվը» (1963) վեպերի, նաև վիպակների, պիեսների:

ՋԱՆՑԼԵՐ, կանցլեր (ֆրանս.՝ chancelier – ատենադպիր, կնքապահ), արտաքին գործերը վարող արքունի գործակալ Կիլիկյան Հայաստանում: Գլխավորել է դեսպանություններ, ընդունել օտարերկրյա դեսպանների, կազմել է միջազգ. գրագրություններ, պայմանագրեր, հրովարտակներ, շնորհագրեր ևն: Պահել է պետ. կնիքը: Ջ-ի պաշտոնը սովորաբար վարել է Սիս մայրաքաղաքի արք-ը:

ՋԱՆՓՈԼԱԴՅԱՆ Լևոն Միքայելի (1912–1997), գինեգործ-տեխնոլոգ: Տեխ. գիտ. դ-ր (1966), պրոֆ. (1967): ՀՀ ԳԱԱ ակադ. (1994, թղթ. անդամ՝ 1971-ից): ՀԽՍՀ գիտ. և տեխ. վաստ. վորձիչ (1967): Աշխ-ները վերաբերում են գինու և կոնյակի արտադր-յան զարգացման տեխնոլոգիային: Մշակել է (Մ. Ս. Սեդրակյանի և Ծ. Լ. Պետրոսյանի հետ) կոնյակի հասունացման, շիթային ռեակտորի միջոցով գինու վերամշակման և գինեթթվակրի ստացման (Կ. Խաչատրյանի և Ի. Գևորգյանի հետ), «Հայկական գինու» (Ն. Կազումովի հետ) տեխնոլոգիաներ:

ՋԱՆՓՈԼԱԴՅԱՆ Հմայակ (1886–1905), ազգ-ազատագր. շարման գործիչ: 1903–1904-ին մասնակցել է Արմ. Հայաստան զենքի փոխադրմանը, 1905-ի փետր-ին Բաքվում՝ հայ-թաթար. ընդհարումներին: Ջոհվել է նահանգապետ Գ. *Նակաշիձեի* դեմ կազմակերպված մահափորձի ժամանակ:

ՋԱՆՓՈԼԱԴՅԱՆ Մագդալինա Գևորգի (ծ. 1942), գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (2007), պրոֆ. (2008): Հեղինակ է «Թումանյանը և ժողովրդական էպոսը» (1969), «Երբ որ զգացմունքն է տողը թելադրում…» (ռուս., 2006) և այլ աշխ-ների: ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2014):

ՋԱՆՓՈԼԱԴՅԱՆ ԹԱՏՐՈՆ, թատեր. շենք Երևանում: Պատկանել է մեծահարուստ Ե. Ջանփոլադյանին: Էմին *Տեր-Գրիգորյանի* նախաձեռնությամբ 1906–07-ին ակումբը վերակառուցվել է թատեր. շենքի: Բացվել է 1907-ին՝ համերգով: 1913-ին առաջին անգամ ներկայացվել է Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերան: Ջ. թ-ում հանդես են եկել նաև Սիրանույշի, Հ. Աբելյանի և այլ թատերախմբեր: 1992–2005-ին՝ Սպայի տուն, 2005-ին տեղում կառուցվել է «Բիզնես կենտրոն»:

ՋԱՋՈՒՌ, գետ ՀՀ Շիրակի մարզում, Կարկաչունի աջ վտակը: Սկիզբ է առնում Շիրակի լ-շղթայի հվ. լանջերից՝ 2135 *մ* բարձր-ից: Երկ.՝ 33,5 *կմ*, ավազանը՝ 392 *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 0,31 *մ³/վ*: Մնումը հիմնականում ձնաանձրևային է (63 %), ռեժիմը՝ անկանոն, սելավային: Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով:

ՋԱՋՈՒՌԻ ԼԵՌՆԱՆՑՔ, Շիրակի և Փամբակի լ-շղթաների հանգուցակետում՝ 1952 *մ* բարձր-յան վրա՝ ՀՀ Շիրակի մարզում: Շիրակի դաշտը կապում է Փամբակի գոգավորությանը: Ջ. լ-ով անցնում է Գյումրի–Վանաձոր խճուղին, թունելով՝ Երևան–Թբիլիսի երկթղ.:

ՋԱՌ-ՋԱՌԻՍԻ ԵԿԵՂԵՑԻ, IV–V դդ-ի ճարտ. հուշարձան ՀՀ Արագածոտնի մարզի Դերեկ գ-ում (մինչև 1978-ը՝ Ջառջառիս): Վաղ միջնադարի ամենախոշոր միանավ եկեղեցիներից է Հայաստանում: Պահպանվել են 3 զույգ որմնամույթերով հս. պատը և արլ. պատի կեսից ավելին:

ՋԱՍԷՄԵ Ջալիլ Օսեի (1908–1998), քուրդ գրող: Հեղինակ է «Իմ օրերը» (1960), «Լեռների երգերը» (1970), «Քրդի օդա» (1975), «Սիրահար քուրդը» (1980) և այլ չափածո ու արձակ գործերի ժող-ների: Կազմել է քրդ. դասագրքեր, քուրդ գրողների գործերի ալմանախներ (հայ.՝ 1953, քրդ.՝ 1954): Քրդ. է թարգմանել Հ. Թումանյանի, Ե. Չարենցի, Հ. Շիրազի և ուր. երկերից: Հայ. են հրատարակվել «Ալագյազ» (1954), «Քրդական սիրավեպեր» (1955), «Մայրենի աղբյուր» (1957), «Իմ օջախը» (1966) գրքերը:

ՋԱՎԱԴՅԱՆ Նիկոլայ Սարգսի (1913–2003), սրտաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1957), պրոֆ. (1961): ԽՍՀՄ փորձարար. էլեկտրաֆիզիոլոգիայի հիմնադիրներից: Աշխ-ները վերաբերում են սրտի հանկարծակի կանգի ժամանակ էլեկտրախթանման միջոցով սրտի վերակենդանացմանը (ԽՍՀՄ-ում՝ առաջինը), ստեղծել է սրտի խթանման սարք: ՀՀ-ում առաջինն է ներդրել ստամոքսաղիք. համակարգի, միզապարկի, ստորին վերջույթների (անոթ. ախտահարումների ժամանակ) թուլության (ատոնիա) էլեկտրախթանումով բուժման եղանակը: Մոսկվայի գլխ. սրտաբան (1950–61):

ՋԱՎԱԽԵՑԻ (Տեր-Գրիգորյան Ղազարոս Սուքիասի, 1874–1937), գրող, գյուղագիր, թարգմանիչ: Վահան *Տերյանի* եղբայրը: Հեղինակ է «Ջաւախքի աղէտը» (1900), «Կրակը» (1903), «Պատկերներ» (գրքույկ 1, 1905) պատմվածքների ժող-ների: 2016-ին հրատարակվել է պատմվածքների և հուշագրությունների «Երկերի ժողովածուն» (կազմ.՝ Վահե Սարգսյան): Թարգմանել է Դ. Մամին-Սիբիրյակի, Չ. Դիքենսի, Մ. Տվենի գործերից:

ՋԱՎԱԽԻՇՎԻԼԻ Իվանե Ալեքսանդրի (1876–1940), վրացի պատմաբան: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939): Աշխ-ները վերաբերում են Վրաստանի ու Կովկասի պատմությանը և աղբյուրագիտ-յանը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1947, հետմահու):

ՋԱՎԱԽԻՇՎԻԼԻ Միխեիլ Սաբայի (Ադամաշվիլի, 1880–1937), վրացի գրող: Հեղինակ է «Կվաչի Կվաչանտիրաձե» (1924), «Գիվի Շադուրի» (1928) և այլ երգիծ. վեպերի, XIX դ-ի Խաչակրաց շարժմանը նվիրված «Արսեն Մարաբդելի» (1933, հայ.՝ 1936) պատմավեպի: Անհատի պաշտամունքի զոհ:

ՋԱՎԱԽՔ, գվո *Գուգարք* նհնգ-ում: Ուրարտ. արձանագրություններում հիշատակվում է «Ջաբախա» ձևով: Ներքին Ջ.՝ 338-ին, Մեծ Հայքի 387-ի բաժանումից հետո Վերին Ջ. միացվել է Վիրքին: X–XI դդ-ում Վերին Ջ-ի հվ. մասը մտել է հայ Բագրատունիների թագավորության մեջ: Վրաստանը Ռուսաստանին միանալուց (1801) և հատկապես Ադրիանուպոլսի 1829-ի հաշտության պայմանագրից հետո Էրզրումի և նրա շրջակայքի հայերը զանգվածաբար տեղափոխվել են Ջ., որի հիմն. բնակչությունը նրանց սերունդներն են: Ռուսաստանին միանալուց հետո Ջ., որպես Ախալքալաքի գվո, ներառվել է Թիֆլիսի նհնգ-ի մեջ: Վերին Ջ. համապատասխանում է ներկայի ՎՀ Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջաններին:

ՋԱՎԱԽՔԻ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ, Հայկ. լ-աշխարհում, գրաղեցնում է Հայկ. հրաբխ. բարձրավանդակի հս. մասը: Տարածքը՝ մոտ 4500 *կմ²*, միջին բարձր.՝ 1800 *մ*, առլգն՝ 3301 *մ* (Մեծ Աբուլ լ.): Ջ. բ. ծալքավոր ու հրաբխ. լ-ների (Սամսարի, Ջավախքի, Էրուշեթի), լ-զանգվածների (Մեծ Աբուլ, Փոքր Աբուլ, Շավնաբադ ևն), սարավանդների (Ախալքալաքի ևն) ու գոգավորությունների (Ծալկայի ևն) համալիր է: Ակտիվ երկրաշարժամետ շրջան է: Կան դիատոմիտի, շինանյութերի, հանք. ջրերի պաշարներ: Ջ. բ-ով են հոսում Կուրը (բարձրավանդակի սահմաններում առաջացնում է մինչև 500 *մ* խոր-յան կիրճ), Փարվանան և այլ գետեր: Բազմաթիվ լեռն. լճերից առավել խոշոր են Փարվանան, Սաղաթափան, Խանչալին, Խոզափինը ևն: Բնորոշ է վերընթաց լանդշաֆտ. գոտիականությունը. հս-արմ. և հս-արլ. մասերում՝ անտառ., սարավանդներում՝ լ-տափաստան., եզրային լ-շղթաներում՝ լ-մարգագետն.:

ՋԱՎԱԽՔԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, *Մթին լեռներ, Խոնավ լեռներ, Կեչուտի լեռնաշղթա, Ջավախքի բարձրավանդակի* հվ-արլ. եզրին՝ ՀՀ-ում և Վրաստանում: Ձգվում է գրեթե միջօրեականի ուղղությամբ՝ Սամսարի լ-շղթայից մինչև Քարախաչի լ-անցքը: ՀՀ-ում սկսվում է Լեգլի լ-գագաթից: Առլգն բարձր. Վրաստանում՝ 3301 *մ* (Մեծ Աբուլ լ.), ՀՀ-ում՝ 3196 *մ* (Աչքասար): Կան քարացրոններ, կատար. մասում՝ հարթ տարածքներ, հնագույն սառցապատման հետքեր: Լանդշաֆտը լ-մարգագետնային է: Լանջերից սկիզբ են առնում Սառնաղբյուր, Ծաղկաշեն, Լոռիգետ, Ջախկալ գետերը:

ՋԱՎԱՐԱ (Jawara) Դաուդա Կայրաբա (ծ. 1924), Գամբիայի նախագահ՝ 1970–94-ին: Գամբիայի ժող. առաջադիմ. կուս-յան հիմնադիրներից (1959) և գլխ. քարտուղար: 1965–70-ին՝ վարչապետ: 1994-ի զինված հեղաշրջման հետևանքով հեռացվել է պաշտոնից:

ՋԱՎՈՒԿՅԱՆ Սեյրան Գևորգի (1934–1998), քիմիկոս: Տեխ. գիտ. դ-ր (1989): Աշխ-ները վերաբերում են գծային ընդարձակման ջերմ. բարձր գործակից ունեցող մետաղների համար ապակենման և սիտալային զոդքերի և ծածկերի ստացմանը:

ՋԱՏԱԳՈՎՈՒԹՅՈՒՆ, *ապոլոգետիկա, պատրիստիկայի* բաղկացուցիչ մասը, որն ուղղված է քրիստոնեության դավանանքի հիմնավորմանն ու պաշտպ-յանը: Ձևավորվել է II–III դդ-ում: Խոշոր ներկայացուցիչներն են Հուստինոս Վկան, Արիստիդեսը, Հերոնիմոսը, Տերտուլիանոսը և ուր.:

ՋԱՏԱԿ, ժանր հինհնդ. գրկ-յան մեջ: Ձևով արձակ ստեղծագործություն է՝ երբեմն ընդմիջված բանաստեղծությամբ: Հնագույն օրինակները (մոտ մ. թ. ա. III դ.) ներկայացնում են Բուդդայի վերածնունդը:

ՋԱՐԵԼ (Jarrell) Ռենդալ (1914–1965), ամերիկացի բանաստեղծ: Հեղինակ է հակապատերազմ. թեմաներով «Սիրելի բարեկամ, ընկեր» (1945), «Կորուստներ» (1948) չափածո գործերի ժող-ների, «Կորուսյալ աշխարհ» (1965), «Բանաստեղծություններ» լիակատար ժողովածու» (հրտ.՝ 1969) ժող-ների, «Թախծոտ սիրտը սուպերմարկետում» (1962) քննադատ. երկի, նաև մանկ. գործերի:

ՋԱՐՄՈՒՇ (Jarmusch) Ջիմ (ծ. 1953), ամերիկացի ռեժ.: Մեդիտացիոն ֆիլմերում ձևափոխել է սյուժեների ավանդ. կառուցվածքը, կասկածի տակ առել ամերիկ. դից-յունը («Խորհրդավոր գնացք», 1989, «Ննջեցյալը», 1995, «Շուն–ուրվականը», «Սամուրայի ուղին», 1999, «Ջարդված ծաղիկներ», 2005, «Վերահսկման սահմանը», 2009, «Պատերսոն», 2016, ևն):

«ՋԱԽԱԽՔ», գր–հաս. պարբերաթերթ (1913–16, Ախալքալաք)։ Գվո–ի հայ. անդրանիկ պարբ–ն է։ Խմբ.՝ Վարդան Շահպարոնյան։

ՋԱՓԱՐԻՉԵ Պրոկոֆի Ապրասիոնի (կուս. ծածկանունը՝ Այյոշա, 1880–1918), վրացի քաղ. գործիչ։ 1917–18–ին՝ ՌՍԴԲ(բ)Կ Բաքվի խորհրդի նախագահի տեղակալ, Բաքվի կոմունայի ղեկ–ներից։ Գնդակահարվել է Բաքվի կոմիսարների հետ։

ՋԱՓԱՐԻՉԵ Ռևազ Անդրեյի (1923–1999), վրացի գրող։ Հեղինակ է «Խնի նորահարսը» (1951), «Ձինվորի այրին» (1956–60), «Ծանր խաչ» (գիրք 1–4, 1973–81) վեպերի, «Նոր սահմաններ» (1986) գրականագիտ. էսսեների ժող–ի, նաև վիպակների և այլ գործերի։ ՎԽՍՀ Շ. Ռուսթավելու անվ. Պետ. մրց. (1983)։

ՋԱՓԱՐԻՉԵ Ուչա Մաղաքիայի (1906–1988), վրացի գեղանկարիչ, գրաֆիկ։ ԽՍՀՄ ժող. նկարիչ (1963)։ ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի ակադ. (1958)։ Հեղինակ է հերոս–ռոմանտիկ. պատմ. թեմաներով կտավների («Մայիսմեկյան ցույցը Թիֆլիսում 1901 թվականին», 1939–41, ևն), ժանր. կոմպոզիցիաների («Մոր խոհերը», 1943, ևն)։ ԽՍՀՄ Պետ. մրց. (1942)։

ՋԵԼԱԻՐՅԱՆՆԵՐ, մոնղ. տոհմ Մերձ. Արևելքում (XIV դ.–XV դ–ի 1–ին 30–ամյակ)։ Հիմնադիրն է Հասան Բուզուրգը, որը Հուլավյան իլխան Աբու Սայիդի օրոք (1316–35) եղել է Անատոլիայի կուսակալ, 1330–ական թթ–ին գերիշխանության համար կռիվներ է մղել *Չորանյանների* դեմ, 1341–ին նրանց հետ կնքած պայմանագրով ստացել *իլխանության* արմ. և հս–արմ. շրջանները՝ Բաղդադ կենտրոնով։ Հասան–Բուզուրգի որդի Ուվեյսը (1356–74) 1360–ին նվաճել է Ատրպատականը, իրեն հայտարարել «սուլթան»։ Ջ–ի տիրապետության տակ է անցել նաև Հայաստանի մեծ մասը։

ՋԵԼԵՊՈՎ Բորիս Սերգեևիչ (1910–1998), ռուս. ֆիզիկոս։ ՌԳԱ թղթ. անդամ (1953)։ Աշխ–ները վերաբերում են միջուկ. ֆիզիկային, հատկապես՝ միջուկ. սպեկտրոսկոպիային։ ԽՍՀՄ Պետ. մրց. (1953)։

ՋԵԼԵՊՈՎ Վենեդիկտ Պետրովիչ (1913–1999), ռուս. ֆիզիկոս։ ՌԳԱ թղթ. անդամ (1966)։ Հիմն. աշխ–ները վերաբերում են ատոմի միջուկին, տարր. և լիցքավորված մասնիկների արագացուցիչներին։ ԽՍՀՄ Պետ. մրց. (1951, 1953)։

ՋԵՄԱԼ ԱԴ–ԴԻՆ ԱԼ–ԱՖՂԱՆԻ (1839–1897), մահմեդ. կրոնա–քաղ. գործիչ։ Մուսուլման. ռեֆորմացիայի հիմնադիրը։ Սահմեդականներին կոչ է արել միավորվել արևմտաեվրոպ. ազդեցության դեմ պայքարելու համար։ *Պանիսլամիզմի* գաղ. նախակարապետը։

ՋԵՄԱԼ ՓԱՇԱ Ահմեդ (1872–1922), թուրք. պետ. գործիչ, երիտթուրքերի պարագլուխներից, Մեծ եղեռնի հանցագործներից։ Երիտթուրք. «եռապետության» անդամ։ Անմիջականորեն մեղսակից է Արմ. Հայաստանից և Կիլիկիայից հայերի զանգված. տեղահանմանն ու կոտորածին, արյան մեջ խեղդել է Ուրֆայի հայերի ինքնապաշտպ–յունը (տես *Ուրֆայի հերոսամարտ 1915*)։ 1919–ին Կ. Պոլսում ռազմ. դատարանը հեռակա մահվան է դատապարտել նաև Ջ. Փ–ին։ 1920–22–ին եղել է ռազմ. խորհրդական Աֆղանստանում։ Թուրքիա վերադառնալու ճանապարհին 1922–ի հուլիսի 25–ին Թիֆլիսում սպանել են Պետրոս Տեր–Պողոսյանն ու Արտաշես Գևորգյանը։

ՋԵՄԻԼԵՎ Ուսեին Մեհմեդի (ծ. 1946), բաշկիր քիմիկոս–օրգանիկ։ ՌԳԱ թղթ. անդամ (1990)։ Բաշկորտոստանի ԳԱ ակադ. (1991)։ Բաշկորտոստանի գիտ. վաստ. գործիչ (2001)։ Աշխ–ները վերաբերում են մետաղակոմպլեքս. կատալիզին, բազմացիկլիկ ածխաջրածինների քիմիային։ ԽՍՀՄ (1990), ՌԴ (2004) Պետ., ՌԳԱ Ա. Մ. Բուտլերովի անվ. (2009) մրց–ներ։

«ՋԵՄԻՆԻ» («Gemini»), ամերիկ. երկտեղանի տիեզ. սարքերի սերիա՝ երկրամերձ ուղեծրով թռիչքների համար, և նրանց մշակման ծրագիրը։ 1–ին արձակումը՝ 1964–ին։ Որոշ սարքեր ունեցել են կցման հարմարանք։ Առյզն զանգվածը՝ 3,8 *տ*, խցիկի ծավալը՝ 2,33 $մ^3$։ 1965–66–ին կատարել են 10 թռիչք՝ 16 տիեզերագնացով (մի մասը դուրս է եկել բաց տիեզերք)։

ՋԵՅՀԱՆ, **Ջահան**, գետ Թուրքիայում՝ Փոքր Ասիա թ–կղզու հվ–արլ–ում՝ Կիլիկիայի արլ–ում։ Երկ.՝ 474 *կմ*, ավազանը՝ 21,2 հզ. $կմ^2$, ջրի միջին ծախսը՝ 230 $մ^3/վ$։ Սկիզբ է առնում Հայկ. Տավրոսի արմ. ճյուղավորություններից, թափվում է Միջերկր. ծովի Ալեքսանդրեկի (Հայոց) ծոցը։ Ջրերն օգտագործում են ոռոգման նպատակով։

ՋԵՅՄՍ (James) Հենրի (1843–1916), ամերիկացի գրող։ Ու. *Ջեյմսի* եղբայրը։ 1915–ից՝ Մեծ Բրիտանիայում։ Հեղինակ է «Դեզի Միլլեր» (1879) վիպակի, «Կնոջ դիմանկարը» (1881), «Դեսպաններ» (1903), սոցիալ–հոգեբ. թեմաներով «Աղավնյակի թևերը» (1902), «Ոսկե գավաթ» (1904), նկարիչների կյանքին նվիրված «Ասպետնի նամակները» (1888), «Վարպետի դասը» (1892), նաև գր. տես. աշխ–ների («Արձակի արվեստը», 1884)։

ՋԵՅՄՍ Ուիլյամ (1842–1910), ամերիկացի փիլ. և հոգեբան։ Պրագմատիզմի հիմնադիրներից։ Հ. *Ջեյմսի* եղբայրը։ Ըստ Ջ–ի «պրագմատիկական չափանիշի»՝ ճշմարիտ է այն, ինչը համապատասխանում է գործողության պրակտիկ հաջողությանը։ Հոգեբ–յան մեջ Ջ. զարգացրել է «գիտակցության հոսքի»՝ փոփոխվող ամբողջական հոգեկան վիճակների հայեցակարգը, որը հույզերի մասին *բիհեյվիորիզմի* սկզբնաղբյուրներից է։

ՋԵՅՐԱՆ (Gazella subgutturosa), սնամեջ եղջերավորների ընտանիքի վիթեր սեռի երկսմբակ կաթնասուն։ Մարմնի երկ.՝ 125 *սմ*, կ. գ.՝ մինչև 33 *կգ*։ Արուների եղջյուրները՝ մինչև 40 *սմ*։ Ապրում է նաև Արլ. Այսրկովկասի անապատներում և կիսաանապատներում։ Թվաքանակը կրճատվում է որսի պատճառով։ Գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում։ Անազատ պայմաններում լավ ընտելանում և բազմանում է։

«ՋԵՆԵՐԱԼ ԴԱՅՆԵՄԻՔՍ» («General Dynemiks»), ԱՄՆ ավիատիեզ. ընկ.։ Հիմնադրվել է 1952–ին՝ «Էլեկտրիկ Բութ»–ի (հիմն.՝ 1899) վերակազմավորմամբ։ Թողարկում է ավիատիեզ. տեխնիկա (վաճառքի՝ 50 %–ը), ռազմ. և այլ նավեր (20 %), հրասայլեր (1–ինը՝ ԱՄՆ–ում) ու զինամթերք։

«ՋԵՆԵՐԱԼ ԷԼԵԿՏՐԻԿ» («General Electric Company»), միջազգ. խոշորագույն ընկ., որն զբաղվում է էլեկտրատեխ. արտադրանքի լայն տեսականու մշակումով, թողարկումով ու վաճառքով։ Հիմնադրվել է 1892–ին։ Կենտրոնատեղին՝ Ֆերֆիլդ բ–ում (ԱՄՆ Քոնեքթիքութի նահց)։

«ՋԵՆԵՐԱԼ ՄՈԹՈՐՍ» («General Motors Corporation»), միջազգ. ընկ., համաշխ. մեքենաշինության առաջատարը։ Ստեղծվել է 1908–ին։ Թողարկում է թեթև և բեռնատար ավտոմեքենաներ, մեքենամասեր։ Առավել հայտնի են «Բյուիկ», «Շևրոլե», «Կադիլակ» մակնիշները։ Կենտրոնատեղին՝ Դետրոյտ բ–ում (ԱՄՆ Միչիգանի նահց)։

ՋԵՆՆԵՐ (Jenner) Էդուարդ (1749–1823), անգլիացի բժիշկ, ծաղկապատվաստման եղանակի հիմնադիրը։ Բժշկագիտ. դ–բ (1813)։ Լոնդոնի ծաղկապատվաստման ընկ–յան (այժմ՝ Ջեններյան ինստ.) առաջին ղեկ–ը (1803–ից)։

ՋԵՆՈՎԱ (Genova), բ. Հս. Իտալիայում՝ Ջենովայի ծոցի ափին։ Լիգուրիա մարզի և Ջենովա գվո–ի վարչ. կենտրոնը։ Ունի 596,6 հզ. բն. (2013)։ Երկրի հս–արմ. մասի ծով. դարպասն է, խոշորագույն նավինգստ–ը՝ Միջերկր. ծովի ափին։ Երկթղ., ավտոմոբիլ. և օդ. ուղիների հանգույց է, արդ. և առևտր. կենտրոն։ Մ. թ. ա. III դ–ում Ջ. նվաճել են հռոմեացիները։ Լանգոբարդների օրոք (641–ից)՝ դքսության, իսկ IX դ–ից մարկգրաֆության կենտրոն էր։ XII դ–ում Ջ. կոմունա էր, որտեղ իշխանության գլուխ էին կանգնած խոշոր վաճառականներն ու հողատերերը, XIV դ–ից՝ դոժը։ XIII–XIV դդ–ում Ջ. բազմաթիվ գաղութներ ուներ Ղրիմում (Կաֆա ևն)։ 1380–ին պարտվել է Վենետիկից, իսկ 1396–ից քանիցս ընկել Ֆրանսիայի և Միլանի իշխանության տակ։ 1528–ին վերականգնվել է Ջ–ի հանրապետությունը, որը ենթակա էր Իսպանիային։ Պահպանվել են մեծաթիվ ճարտ. հուշարձաններ՝ Սանտա Մարիա դի Կաստելլո եկեղեցին (XI դ.), Սան Լորենցո տաճարը (XI–XII դդ.) ևն, որոնք Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում են։

ՋԵՆՈՎԱՅԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ 1922, միջազգ. համաժողով տնտ. և ֆին. հարցերով։ Տեղի է ունեցել ապրիլի 10–ից մայիսի 19–ը *Ջենովայում*։ Մասնակցել են 28 եվրոպ. պետություններ, ՌԽՖՍՀ–ն և բրիտ. 5 դոմինիոն։ Ջ. խ–ում կարևոր նշանակություն է ունեցել ընդհ. զինաթափման մասին խորհրդ. պատվիրակության առաջարկությունը։ Սակայն ինչպես այդ, այնպես և ֆինանսատնտ. փոխադարձ հարցերը չեն լուծվել, որոնց քննարկումը շարունակվել է *Հաագայի խորհրդաժողովում* (1922)։ Ջ. խ–ում խորհրդ. դիվանագիտ–յանը հաջողվել է Գերմանիայի հետ կնքել *Ռապալոյի պայմանագիրը*։

ՋԵՆՈՎԱՅԻ ԾՈՑ (Golfo di Genova), Միջերկր. ծովի մաս Իտալիայի հս–արմ. ափերի մոտ։ Երկ.՝ 30 *կմ*, լայն. մուտքի մոտ՝ 96 *կմ*, խոր.՝ 1000–1500 *մ*։ Գլխ. նվինգստ–ները՝ Ջենովա, Սավոնա։

ՋԵՆՏԻԼԵ (Gentile) Ջովաննի (1875–1944), իտալացի փիլ., պետ. գործիչ։ Ֆաշիզմի գաղափարախոսներից։ «Իտալական հանրագիտարանի» գաղ. ղեկ. (1925–43)։ Ստեղծել է «ակտուալ իդեալիզմի» համակարգը։ Ջ. *Մուսոլինիի* կառ–յան օրոք եղել է լուսավորության նախարար (1922–24), հիմնավորել է պետությունը բռնի կերպով անհատին ենթարկելու գաղափարը։

ՋԵՆՏԻԼԵՍԿԻ (Gentileschi, Լոմի) Օրացիո (1563–1639), իտալացի գեղանկարիչ։ Հեղինակ է կրոն. և կենցաղ. թեմաներով քնար., նրբաճաշակ գուներանգներով նկարների («Սուրբ Ցեցիլիան», 1621–23, «Վինսահարուհին», մոտ 1626)։

ՋԵՌՈՒՅՈՒՄ, շինությունների արհեստ. տաքացում՝ մինչև ջերմ. հարմարավետության ջերմաստիճան (բնակելի շենքերում՝18–20ºC), երբեմն՝ ըստ տեխնոլոգ. պահանջի: «Ջ.» հասկացությունը ներառում է նաև ամբողջ ջեռուցման համակարգը: Հիմն. տեսակներն են՝ ջր., օդ., գազ., ճառագայթ., գոլորշ., վառարան., էլ. ևն:

ՋԵՎՈՆՍ (Jevons) Ուիլյամ Սթենլի (1835–1882), անգլիացի տրամաբան, տնտեսագետ, վիճակագիր: Ստեղծել է տրամաբ. համակարգ, որը հիմնված է հավասարների փոխարինման սկզբունքի վրա, «տրամաբանական հաշիվներ» և տրամաբ. մեքենա: Առլգն օգտակարության տեսության կողմնակից էր:

ՋԵՐԵՋՅԱՆ Եղիա (ծ. 1957), հաս., քաղ. գործիչ: ՍԴՀԿ Լիբանանի վարիչ մարմնի ատենապետ (1991), կուս-յան կենտր. վարչության անդամ (1995): Ընտրվել է (1992, 1996, 2000) Լիբանանի խորհրդարանի անդամ, մասնակցել արաբ. երկրների խորհրդարան. վեհաժողովին (1994, Դամասկոս), Հայաստանի հետ միջպետ. հարաբերությունների մշակման ու կարգավորման աշխ-ներին:

ՋԵՐԵՋՅԱՆ Սոնա Մ. (ծ. 1941), սոցիոլոգ: Սոցիոլոգիայի դ-ր (1976, ԱՄՆ): Հայկազյան համալսարանի (Բեյրութ) պրոֆ.: Աշխ-ները վերաբերում են ռազմավար. և նորարար. կառավարման հարցերին: Փորձագիտ. այցով եղել է ՀՀ կառավարման ակադ-ում:

ՋԵՐՄ, գք Բարձր Հայք նահգ-ի Մանանաղի գվծ-ում՝ համանուն գետի ափին: Ըստ Արիստակես Լաստիվերցու՝ Ջ-ում են աղվեսադրոշմով խարանվել Մանանաղիի թոնդրակյանները, որոնց ձերբակալել էր գվծ-ի Սամվել եպս-ը:

ՋԵՐՄ ՏԻԵԶԵՐՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, շարժընթացների տեսություն, որի համաձայն՝ անցյալում Տիեզերքն ունեցել է ավելի մեծ, քան այժմ, խիտ մատերիա և շատ բարձր ջերմաստիճան: Տեսության իսկության վճռորոշ հաստատումը մնացորդային ճառագայթման բացահայտումն էր: Տես նաև *Տիեզերքի ջերմային մահ*:

ՋԵՐՄԱ..., բարդ բառերի սկզբնամաս. ցույց է տալիս ջերմությանը, ջերմության օգտագործմանը, ջերմությամբ մշակմանը վերաբերելը:

ՋԵՐՄԱԷՄԻՍԻՈՆ ՎԵՐԱՓՈԽԻՉ էներգիայի, ջերմ. էներգիան անմիջականորեն էլեկտրականի վերափոխող սարքավորում. աշխ-ը պայմանավորված է ջերմաէլեկտրոն. առաքումով: Պարզագույն սարքը կազմված է միմյանցից վակուումով առանձնացված կաթոդից (էմիտեր) և անոդից (կոլեկտոր): Կիրառումն առավել հեռանկարային է փոքր չափերի և հզորության (մի քանի տասնյակ *Վտ*) էլ. սարքերում: Օգգ-ն՝ մինչև 35 %:

ՋԵՐՄԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, **թերմոթերապիա**, ջերմ. բուժգործողությունների կիրառումը: Լինում են տեղային (ջր. և էլ. ջեռակներ, տաքացնող թրջոցներ) և ընդհ. (ցեխ., ավազ., ջերմալուս. լոգանքներ): Ջ. իրականացնում են Մինինի շիկացման լամպերով, ԵԿՀՀ-ով, տաք ցեխերով, պարաֆինով, օզոկերիտով և էլ. հոսանքով:

ՋԵՐՄԱԳԱԼՎԱՆԱՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ, պայմանավորված են հաղորդիչների էլ. և ջերմ. հատկությունների վրա մագնիս. դաշտի ազդեցությամբ: Ջ. ե. են *Նեռնստ–Էտինգսհաուզենի երևույթը* ևն:

ՋԵՐՄԱԴԻՏՈՒՄ, ներսադիտման եղանակ, երբ անզեն աչքով անտեսանելի մարմինների պատկերն ստանում են մարմնի արձակած կամ նրանից անդրադարձած ջերմ. (ԵԿ) ճառագայթների միջոցով:

ՋԵՐՄԱԶԳԱՅՈՒՆ ՆԵՐԿԵՐ, ջերմաին-դիկատոր. ներկեր, որոշակի ջերմաստիճանում գունափոխվող նյութեր պարունակող ներկեր: Գույնի փոփոխությունը պայմանավորված է Ջ.ն-ում պարունակվող ջերմազգայուն նյութի քայքայմամբ (երկաթի հիդրօքսիդ, կադմիումի կարբոնատ ևն) կամ նոր նյութերի առաջացումով (օր.՝ կապարի սուլֆիդի առաջացումը թիոմիզանյութից և կապարի սուրից): Ջ. ն. լինում են դարձելի՝ սառեցնելիս վերականգնում են իրենց գույնը, և ոչ դարձելի: Ջ.ն. կարող են օգտագործվել ջերմաստիճանը չափելու համար:

ՋԵՐՄԱԶՈՒՅԳ, ջերմազգայուն տարր. կազմված է 2 հաջորդաբար միացված (զոդված) տարբեր հաղորդիչներից (հազվադեպ՝ կիսահաղորդիչներից): Եթե զոդվածքները գտնվում են տարբեր ջերմաստիճաններում, Ջ-ի շղթայում առաջանում է էլշու (ջերմաէլշու), որի մեծությունը միարժեքորեն կախված է «տաք» և «սառը» զոդվածքների ջերմաստիճանների տարբերությունից: Կիրառվում է չափիչ սարքերում:

ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ, ջէկ, արտադրում է էլեկտրաէներգիա՝ օրգ. վառելանյութի այրումից ստացված ջերմ. էներգիայի փոխակերպմամբ: Հիմն. տիպերն են՝ գոլորշատուրբին., գազատուրբին. և դիզելային: Երբեմն Ջ. են համարում նաև ատոմ., երկրաջերմ. և մագնիսահիդրոդինամիկ. գեներատորներով էլեկտրակայանները:

ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ, արտադրում է ոչ միայն էլեկտրաէներգիա, այլև տաք ջուր և գոլորշի:

ՋԵՐՄԱԷՆԵՐԳԵՏԻԿԱ, *էներգևտիկայի* բաժին. զբաղվում է ջերմությունն էներգիայի այլ տեսակների (հիմնականում՝ մեխ. և էլ.) վերափոխելով: Մեխ. էներգիան ստեղծվում է ջերմաուժային սարքավորումներում կամ էլեկտրաէներգիայի արտադրող գեներատորներում: Ջերմությունն անմիջականորեն էլեկտրաէներգիայի վերափոխման համար օգտագործում են ջերմաէլ. գեներատորներ, *ջերմաէմիսիոն վերափոխիչներ*, մագնիսահիդրոդինամիկ. գեներատորներ: Ժամանակակից Ջ-ի հիմքն են ջէկերն ու նաշ-ները:

ՋԵՐՄԱԻՈՆԱՅԻՆ ԷՄԻՍԻԱ, դրական կամ բացաս. իոնների արձակումը շիկացած մարմիններից: Մետաղներում Ջ. է. կարող է տեղի ունենալ ինչպես սեփ. իոնների, այնպես էլ այն նյութերի իոնների հաշվին, որոնց ատոմներն ադսորբված են մետաղի արտաքին մակերևույթի վրա: Այս դեպքում Ջ. է. կոչվում է նաև մակերևութ. իոնացում:

ՋԵՐՄԱԾԻՆ, անկշիռ նյութ՝ ըստ XVIII–XIX դդ-ում տարածված պատկերացումների, որով իբր պայմանավորված էին մարմինների ջերմ. հատկությունները: Տեսության սխալականությունն ապացուցվել է XIX դ-ի կեսերին՝ մոլ. ֆիզիկայի ստացած տվյալներով:

ՋԵՐՄԱԿԱՅՈՒՆ ՄԱՆՐԱԹԵԼԵՐ, սինթետիկ մանրաթելեր, որոնք նախատեսված են 200–300ºC-ում երկարատև շահագործման համար: Ստանում են արոմատիկ պոլիամիդներից, պոլիիմիդներից և մի շարք այլ պոլիմերներից:

ՋԵՐՄԱԿԱՅՈՒՆ ՊԱՅԹՈՒՅԻԿ ՆՅՈՒԹԵՐ, կարող են օգտագործվել բարձրջերմաստիճան. պայմաններում (200–300ºC): Լայնորեն տարածված է *օկտոգենը*: Կիրառում են նավթա- և գազահորերում պայթեցման աշխ-ներում:

ՋԵՐՄԱԿԱՅՈՒՆ ՊՈԼԻՄԵՐՆԵՐ, պոլիմերներ, որոնցից պատրաստված իրերը կայուն են 300–320ºC-ից բարձր ջերմաստիճաններում: Ջ. պ. (ֆտորոպլաստներ, տարրօրգ. պոլիմերներ ևն) օգտագործում են թաղանթների, պլաստմասսաների, լաքաներկային նյութերի, մանրաթելերի, սոսինձների և այլ ձևերով:

ՋԵՐՄԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ, ֆիզիոլոգ. շարժընթացների ամբողջություն, որոնք ապահովում են մարդու և տաքարյուն կենդանիների (թռչուններ ու կաթնասուններ) մարմինների ջերմաստիճանի հարաբեր. կայունությունը: Կատարվում է քիմ. և ֆիզ. ջերմակարգավորիչ շարժընթացների շնորհիվ: Իրականանում է ջերմագոյացման ինտենսիվության փոփոխությամբ (օրգանիզմում օքսիդացման շարժընթացների դեպքում) և մաշկի միջոցով ջերմատվության փոփոխության (քրտինքի առաջացման) ճանապարհով:

ՋԵՐՄԱԿԻՐ, ջերմության փոխադրման համար օգտագործվող շարժուն միջավայր (գազ, գոլորշի, հեղուկ): Միջուկ. ռեակտորներում Ջ. է հեղուկ կամ գազ. նյութը, որն ակտիվ գոտուց հեռացնում է միջուկների տրոհման հետևանքով անջատված ջերմությունը: Որպես Ջ.՝ օգտագործում են սովոր. և ծանր ջուրը, ջր. գոլորշին, օրգ. հեղուկներ, CO_2, He, հեղուկ մետաղներ ևն:

ՋԵՐՄԱՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ, **ջերմային տենդ**, մարդու և կենդանիների հիվանդություն՝ պայմանավորված օրգանիզմի վրա միջավայրի բարձր ջերմաստիճանի երկարատև ազդեցության կամ արևի ճառագայթների անմիջական ազդեցության (արևահարություն) ժամանակ ջերմակարգավորման խանգարմամբ: Մարդու Ջ. արտահայտվում է գլխացավերով, փսխումով, ուշաթափությամբ ևն:

ՋԵՐՄԱՋՈՐ, գվծ Սոկք նահգ-ում՝ Ջերմ (Արլ. Տիգրիս) գետի ձորահովտում: Մակերևույթը լեռնային է, անտառապատ ու ջրառատ: Թովմա Արծրունին Ջ-ում հիշատակում է Ջոայ (Ջողայ, Ջոել) ամուր բերդը, որտեղ առժամանակ ապաստանել է *Վարդան Սևամիկոնյանը*: Ջ. հիմնականում համապատասխանում է հետագա *Շապահ* գվծ-ին:

ՋԵՐՄԱՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԷՖԵԿՏ, գերհոսուն հելիումի հոսքի առաջացումը նեղ ճեղքերում կամ մազանոթներում՝ ջերմաստիճանների տարբերության (մազանոթի ծայրերում) շնորհիվ: 1-ին անգամ նկատել են կանադացի ֆիզիկոս Ջ. Ալենը (1908–2001) և Հ. Ջոնսը (1938–ին): Հակառակ երևույթը մեխանոկալորիական էֆեկտն է:

ՋԵՐՄԱՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՄԻՆԹԵԶ (ՋՄԿՍ), թեթև ատոմային միջուկներից ավելի ծանր միջուկների սինթեզը՝ էներգիա ստանալու նպատակով, որը, ի տարբերություն պայթյուն. ջերմամիջուկ. սինթեզի, կառավարելի է: ՋՄԿՍ ավանդ. միջուկ. էներգետիկայից տարբերվում է նրանով, որ վերջինում օգտագործվում է միջուկի տրոհման ռե-

ակցիան, երբ ծանր միջուկներից ստացվում են ավելի թեթև միջուկներ: ՋՄԿՍ-ի համար նախատեսված հիմն. միջուկ. ռեակցիաներում օգտագործվելու են ***դեյտերիումը*** և ***տրիտիումը***, իսկ հեռու ապագայում՝ Հելիում-3-ը և Բոր-11-ը:

ՋԵՐՄԱՅԻՆ ԱԼՄՈՒԿ, հոսանքի կամ լարման պատահական փոփոխություններ ռադիոէլեկտրոն. սարքերում, որոնք հարուցվում են էլեկտրոնների կամ իոնների ջերմ. քաոսային շարժմամբ:

ՋԵՐՄԱՅԻՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ, նյութերի (մակերևույթի կամ առանձին մասերի)՝ մոլ-ների ջերմ. շարժման տարածմանը դիմադրելու հատկությունը: ***Ջերմահաղորդականության*** գործակցի հակադարձ մեծությունն է:

ՋԵՐՄԱՅԻՆ ԴԻՄՈՑՈՒՄ, ***ջերմային քայքայում***, նյութերի քայքայման դարձելի քիմ. ռեակցիաներ, որոնք ընթանում են ջերմաստիճանը բարձրացնելիս: Ջ. դ-ման հետևանքով 1 նյութից առաջանում են 1-ից ավելի պարզ նյութեր: Գործն. նշանակություն ունեն ջրի և ածխաթթու գազի քայքայումը, ածխաջրածինների ջրածնազրկումը, կարբոնատների, սուլֆիդների դիսոցումը, որոնցով էլ պայմանավորված են բազմաթիվ ջերմատեխ., քիմ. և մետաղագործ. շարժընթացներ:

ՋԵՐՄԱՅԻՆ ԷՖԵԿՏ ՌԵԱԿՑԻԱՅԻ, քիմ. ռեակցիայի ընթացքում համակարգի կլանած կամ անջատած ջերմության քանակությունը: Հավասար է համակարգի ներքին էներգիայի փոփոխությանը՝ հաստատուն ծավալի, կամ էնթալպիայի փոփոխությանը՝ հաստատուն ճնշման, և ներքին ուժերի աշխ-ի բացակայության դեպքում: Քիմ. ռեակցիաները լինում են ջերմանջատիչ (էկզոթերմ) կամ ջերմակլանիչ (էնդոթերմ):

ՋԵՐՄԱՅԻՆ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ, մարմնի չափերի փոփոխությունը նրա տաքացման դեպքում: Բնութագրվում է ծավալ. ընդարձակման գործակցով՝ $\alpha_v = V^{-1}(\Delta V/\Delta T)$ ξ, իսկ պինդ մարմինների համար՝ նաև գծային ընդարձակման գործակցով՝ $\alpha_q = l^{-1}(\Delta l/\Delta T)$ ξ, որտեղ Δl-ը՝ գծային չափի, ΔV-ն՝ մարմնի ծավալի, ΔT-ն ջերմաստիճանի փոփոխություններն են, ξ-ը ցույց է տալիս Ջ. ը-ման պայմանները (սովորաբար՝ հաստատուն ճնշման դեպքում): Իզոտրոպ մարմինների համար $\alpha_v = 3\alpha_q$:

ՋԵՐՄԱՅԻՆ ԻՈՆԱՑՈՒՄ՝ ատոմների, տեղի է ունենում գազերի տաքացման ժամանակ՝ ատոմների միմյանց բախման հետևանքով: Նկատելի ինտենսիվություն ունի 10^3–10^4 K ջերմաստիճաններում:

ՋԵՐՄԱՅԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ աշխատանքի, ջերմության քանակ, որն էներգետիկորեն համարժեք է աշխ-ի միավորին: Կիրառվում է այն դեպքերում, երբ աշխ-ն ու ջերմության քանակը չափվում են տարբեր միավորներով: Ջերմության մեխ. համարժեքի հակադարձն է:

ՋԵՐՄԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ, ստացված և ծախսված ջերմ. էներգիաների համադրումը ջերմ. շարժընթացների վերլուծության ժամանակ: Կազմվում է ինչպես բնական երևույթների (մթն-ի, օվկ-ի, երկրի մակերևույթի, երկրագնդի և Ջ. հ.), այնպես էլ տարբեր ջերմ. սարքավորումների (կաթսա, գոլորշ. և գազ. տուրբիններ, վառարաններ) համար:

ՋԵՐՄԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԾ, երկրի մակերևույթի վրա օդի բազմամյա ամենաբարձր միջին ջերմաստիճանի (26–27°C) զուգահեռականը: Ձմռանը համընկնում է աշխարհագր. հասարակածի, ամռանը՝ 20–25° հս. լայն-ների հետ (օդի միջին ջերմաստիճանը՝ մոտ 28°C): Միջին տարեկան դիրքը գտնվում է հս. լայն-յան մոտ 10°-ի սահմաններում: Ջ. հ-ի դիրքի տատանման պատճառն ամռանը հս. կիսագնդի ցամաքների խիստ տաքացումն է:

ՋԵՐՄԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆ, թերմոդինամիկ. համակարգի վիճակ, երբ նրա բոլոր մասերն ունեն միևնույն ջերմաստիճանը: Երբեմն Ջ. հ. ասելով՝ նկատի ունեն ***թերմոդինամիկական հավասարակշռությունը***:

ՋԵՐՄԱՅԻՆ ՀԱՐՎԱԾ, մարդու և կենդանիների սուր հիվանդություն, որը պայմանավորված է ջերմակարգավորման խանգարմամբ կամ օրգանիզմի վրա արտաքին միջավայրի բարձր ջերմաստիճանի տևական ազդեցությամբ և կամ արևի ուղղակի ճառագայթահարումով (արևային հարված): Ջ. հ-ից մարդ ունենում է գլխացավ, սրտխառնոց, ուշագնացություն ևն:

ՋԵՐՄԱՅԻՆ ՀՈՍՔ, վեկտոր. մեծություն, որն ուղղված է ջերմաստիճանի գրադիենտին հակառակ և հավասար է միավոր ժամանակում կամայական իզոթերմ մակերևույթով անցնող ջերմության քանակին: Չափվում է *Վտ*-երով կամ *կկալ/ժ*-երով:

ՋԵՐՄԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄ, էլեկտրամագնիս. ճառագայթում, որն արձակում է որոշակի ջերմաստիճանի նյութը՝ իր ներքին էներգիայի հաշվին: Ունի անընդհատ սպեկտր, որի առլգն արժեքի դիրքը կախված է նյութի ջերմաստիճանից: Եթե Ջ. ճ. նյութի հետ թերմոդինամիկ. հավասարակշռության մեջ է, կոչվում է հավասարակշռային, էներգիայի բաշխումն այդ սպեկտրում որոշվում է Պլանկի ճառագայթման օրենքով: Մարմինների Ջ. ճ-ման համար գործում է ***Կիրխհոֆի ճառագայթման օրենքը***:

ՋԵՐՄԱՅԻՆ ՄԵՔԵՆԱ, ջերմ. շարժիչով և ջերմ. պոմպով մեքենա, որով իրականացվում է ջերմության փոխարկումն աշխ-ի, կամ հակառակը: Աշխ-ի հիմքում ընկած է աշխատող մարմնի (գազ, ջր. գոլորշի ևն) կատարած շրջ. շարժընթացը (թերմոդինամիկ. ցիկլ): Իրականացվող ցիկլի որոշ հատվածներում ջերմությունը մատուցվում է աշխատող մարմնին, իսկ այլ հատվածներում նրանից հեռացվում է (ավելի ցածր ջերմաստիճանում): Իդեալ. Ջ. մ-ի համար աշխատող մարմնի կատարած աշխ-ը հավասար է մատուցվող և հեռացվող ջերմությունների քանակների տարբերությանը:

ՋԵՐՄԱՅԻՆ ՆԵՅՏՐՈՆՆԵՐ, 5 ·10^{-3}-ից մինչև 0,5 *Էվ* էներգիայով ***նեյտրոններ***:

ՋԵՐՄԱՅԻՆ ՇԱՐԺԻՉ, բոլոր այն շարժիչները, որոնք ջերմ. էներգիան (սովորաբար՝ այրվող վառելանյութի) վերածում են օգտ. մեխ. էներգիայի: Այդպիսիք են բոլոր նաշ-ները:

ՋԵՐՄԱՅԻՆ ՊՈՄՊ, ջերմ. էներգիայի փոխանցման սարք՝ ցածր ջերմաստիճանի ջերմատվիչից (սովորաբար՝ շրջակա միջավայրից) ավելի բարձր ջերմաստիճանի ջերմընդունիչին: Իրականացվում է էներգիա ծախսելով: Աշխ-ի բնույթով նման է սառնարան. մեքենային: Երբեմն կիրառվում է ջեռուցման համար:

ՋԵՐՄԱՅԻՆ ՌԵԱԿՏՈՐ, ***ջերմային նեյտրոններով աշխատող ռեակտոր.*** միջուկ. ռեակտոր, որտեղ նյութի միջուկների տրոհումների ճնշող մեծամասնությունը կատարվում է ջերմ. նեյտրոնների հետ փոխազդեցության արդյունքում: Ջ. ռ-ի համար միջուկ. վառելանյութ են ^{233}U, ^{235}U, ^{241}U: Ջ. ռ-ները կիրառվում են էլ. էներգիայի արտադր-յան, ջրի աղազրկման, արհեստ. ռադիոակտիվ նյութերի ստացման, նյութերի և կառուցվածքների տեխ. փորձարկման և այլ նպատակներով:

ՋԵՐՄԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ջերմաստիճանի ծրագրված փոփոխության պայմաններում նյութում կատարվող ֆիզքիմ. և քիմ. շարժընթացների ուսումնասիրման եղանակ: Ջ. վ-ով որոշում են ֆազ. անցումների ջերմաստիճանները, կառուցում ֆազ. դիագրամներ ևն:

ՋԵՐՄԱՆԱՎ, նավ, որի էներգիայի հիմն. աղբյուրը նաշ-ն է (սովորաբար՝ դիզել.) կամ գազ. տուրբինը: Ինքնագնաց նավերի ամենատարածված տեսակն է (տրանսպորտ. նավերի ավելի քան 90 %-ը):

«ՋԵՐՄԱՆՑ ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆ», ***Մխիթար Հերացու*** հիմն. աշխ-ը, գրել է 1184-ին Կիլիկյան Հայաստանի խոսակց. լեզվով: Աշխ-ում նկարագրել է տենդերն ու նրանց հարուցիչ գործոնների էությունը: Բաղկացած է առաջաբանից և 46 գլխից: Հնագույն գրչագիրը Մտնդ-ում է (ձեռ. № 416, ընդօրինակված 1279-ին): Գրքի համառոտ խմբագրությունը կազմում է «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» 2-րդ մասը (Վնտ. մտնդ., ձեռ. № 1281): Հրատարակվել է 1832-ին Վենետիկում: Թարգմանվել է գերմ. (1908), ռուս. (1955) և այլ լեզուներով:

ՋԵՐՄԱՉԱՓՆԵՐ, ջերմաստիճանի չափման սարքեր, որոնց աշխ-ը հիմնված է տարբեր ֆիզ. մեծությունների՝ ջերմաստիճանից կախվածության վրա: Տարբերում են գազ., հեղուկ., դիմադրության Ջ., հրաչափներ ևն:

ՋԵՐՄԱՉԱՓՈՒՄ, ֆիզիկայի բաժին. ուսումնասիրում է ջերմաստիճանի չափման եղանակները: Խնդիրներն են՝ ջերմաստիճան. սանդղակների վերարտադրման եղանակների մշակումը, աշխ. և չափանմուշ. ջերմաչափիների ստեղծումը:

ՋԵՐՄԱՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, տես *Էնթալպիա*:

ՋԵՐՄԱՊԼԱՍՏՆԵՐ, ***պլաստմասսաներ***, որոնք տաքացնելիս դարձելիորեն անցնում են էլաստիկ կամ մածուցիկահոսուն վիճակի և այդ վիճակում կաղապարվում իրերի ձևով: Առավել տարածված են պոլիէթիլենի, պոլիստիրոլի, պոլիվինիլքլորիդի հիմքով Ջ.:

ՋԵՐՄԱՍԵՐՆԵՐ, **թերմոֆիլներ**, օրգանիզմներ, որոնք բնականոնորեն գոյատևում և բազմանում են 45°C-ից բարձր (կենդանի էակների մեծ մասի համար՝ մահացու) ջերմաստիճաններում: Դրանցից են որոշ ձկներ, անողնաշարներ (որդեր, միջատներ, փափկամարմիններ), միկրոօրգանիզմներ և բույսեր: Ապրում են տաք աղբյուրներում, արևի ճառագայթներով տաքացող հողի վերին շերտերում, ինքնատաքացող հիմնանյութերում (գոմաղբ, տորֆ, հացահատիկ):

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ, ֆիզ. մեծություն, որը բնութագրում է համակարգի թերմոդինամիկ. հավասարակշռության վիճակը: Մեկուսացված համակարգի բոլոր մասերի Ջ-ներն այդ վիճակում նույնն են: Եթե համակարգը հավասարակշռված չէ, ապա նրա տարբեր Ջ-ներ ունեցող

հատվածների միջև կատարվում է ջերմափոխանակություն: Ավելի բարձր Ջ. ունեն այն մարմինները, որոնց մոլ-ների (ատոմ-ների) միջին կինետիկ էներգիան ավելի մեծ է: Ջ. չափում են *ջերմաչափներով*: Թերմոդինամիկայի երկրորդ սկզբունքի համաձայն՝ Ջ. մարմնի էներգիայի ածանցյալն է՝ ըստ էնտրոպիայի: Այդպիսի Ջ. միշտ դրական է, այն անվանում են բացարձակ Ջ. (նշանակումը՝ T): Բացարձակ Ջ-ի չափման միավոր է ընդունված (ՄՄՀ) Կելվինը (K): Ջ-ի արժեքները, ըստ Ցելսիուսի սանդղակի (t°C), բացարձակ Ջ-ի հետ կապված են t = T – 273,15 K (1°C = 1K) բանաձևով:

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ԱԼԻՔՆԵՐ, պարբերաբար տատանվող ջերմաստիճան. միջավայրում տարածվող ալիքներ. պայմանավորված են աղբյուրից եկող ջերմության քանակի կամ միջավայրի ջերմհաղորդականությունը պայմանավորող որևէ մեծության պարբեր. փոփոխություններով:

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿՆԵՐ, ջերմաստիճանի թվային արժեքների համադրելի համակարգեր: Գոյություն ունեն բացարձակ Ջ. ս. (Կելվինի սանդղակ) և տարատեսակ. փորձարար. Ջ. ս., որոնք հիմնված են նյութերի՝ ջերմաստիճանից կախված հատկությունների (ջերմ. ընդարձակում, էլ. դիմադրության փոփոխություն ևն) փոփոխությունների վրա: Փորձարար. Ջ. ս. տարբերվում են իրենց հաշվարկի սկզբնակետերով և ջերմաստիճանի միավորի չափով: Առավել տարածված են °C (Ցելսիուսի սանդղակ), °R (Ռեոմյուրի սանդղակ), °F (Ֆարենհայտի սանդղակ), որոնք միմյանց հետ կապված են՝ 1°R = 1,25°C, 1°F = 5/9°C: Գործնականում Կելվինի սանդղակը վերարտադրող Ջ. ս. (1K = 1°C) կոչվում է միջազգ. գործն. ջերմաստիճան. սանդղակ:

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ԻՆՎԵՐՍԻԱ, *շրջափոխում*, բարձր-յանը զուգընթաց ջերմաստիճանի բարձրացում մթն-ի որոշակի շերտում՝ սպասվող իջեցման փոխարեն: Տարբերում են ջերմաստիճանի երկրամերձ շրջափոխում՝ երկրի մակերևույթից սկսած, և մթն-ում: Առաջիններն առավել հաճախ պայմանավորված են երկրի սառը մակերևույթից օդի սառեցմամբ, մյուսը՝ օդի վարընթաց շարժմամբ, որն ադիաբատորեն բարձրացնում է նրա ջերմաստիճանը:

ՋԵՐՄԱՏԱՐԲ, տարբեր հաղորդիչներից կամ կիսահաղորդիչներից կազմված էլ. շղթա (կամ շղթայի մաս)՝ ջերմ. էներգիան էլեկտրականի (կամ հակառակը) վերածելու համար: Գործողության հիմքում ընկած է ջերմաէլ. երևույթների օգտագործումը: Կիրառում են չափիչ տեխնիկայում (ջերմազույգեր) և ջերմաէլ. գեներատորների, սառնարանների, օդափոխիչների արտադր-յան մեջ:

ՋԵՐՄԱՏԵԽՆԻԿԱ, գիտ-յան և տեխնիկայի բնագավառ. ընդգրկում է ջերմ. էներգիայի ստացման և օգտագործման եղանակները: Ջերմությունն ստեղծվում է կաթսայատների հնոցներում, վառարաններում, օրգ. վառելանյութի այրման խցերում, ատոմ. ռեակտորներում, օգտագործում են նաև երկրի ընդերքի ջերմությունը, Արեգակի ճառագայթումը: Ջերմությունն էներգիայի այլ տեսակների վերածելու հարցերով զբաղվում է *ջերմաէներգետիկան*:

ՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐ, ջերմատներում մշակվող բանջար., գեղազարդիչ, պտղատու և հատապտղատու բույսեր: Ջ. մ. են ջերմոց. (ջերմոցներում աճեցվող) մշակաբույսերը, բոստանայիններից՝ սեխը, գեղազարդիչներից՝ քրիզանթեմը, մեխակը, արջտակը, մոխրածաղիկը, շահպրակը ևն, պտղատուներից՝ կիտրոնը, դեղձը, հատապտուղներից՝ գետնաելակը: Կարելի է մշակել նաև խաղող, սնկեր ևն:

ՋԵՐՄԱՏՎՈՒԹՅՈՒՆ (ֆիզիոլոգ.), կենդանի օրգանիզմի կենսագործունեության ընթացքում գոյացած և կամ դրսից ստացած ջերմության անջատումը: Իրականացվում է հիմնականում 3 ճանապարհով՝ կոնվեկցիայով (շրջապատող օդի կամ ջրի կտրուկ աճող շարժումներով), գոլորշիացմամբ (օդի հարաբեր. խոնավության նվազման դեպքում) և ճառագայթմամբ (շրջապատող առարկաների ջերմաստիճանի նվազման դեպքում):

ՋԵՐՄԱԲՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, *ջերմագոյացում*, օրգանիզմում ջերմության գոյացումը նրա կենսագործունեության ընթացքում, բարձրակարգ մարդու և կենդանիների օրգանիզմներում տեղի է ունենում հիմնականում շնչառության, մարսողության, մկանների աշխ-ի հետ կապված օքսիդացման արդյունքում և ուղղակիորեն կախված է դրանց ինտենսիվությունից: Լարված մկան. աշխ-ի դեպքում (հանգստի վիճակի հետ համեմատած) Ջ. կարող է աճել 10 անգամ:

ՋԵՐՄԱՔԻՄԻԱ, քիմիայի բաժին. ուսումնասիրում է քիմ. ռեակցիաներին ուղեկցող ջերմ. երևույթները: Ջերմաքիմ. տվյալները քիմ. միացությունների (առաջացման և այրման ջերմություններ, ռեակցիայի ջերմ. էֆեկտ ևն) օգտագործվում են քիմ. տեխնոլոգիայում, օր.՝ շարժընթացների ջերմ. հաշվեկշիռը հաշվելու ևնի համար:

ՋԵՐՄԻ (Germi) Պիետրո (1914–1974), իտալացի կինոռեժ.: Նկարահանել է «Սիցիլիայի երկնքի տակ» (1949), «Մեքենավարը» (1956), «Ամուսնալուծություն իտալական ձևով» (1961), «Տիկնայք և պարոնայք» (1965), «Սերաֆինո» (1968), «Ալֆրեդո, Ալֆրեդո» (1971) և այլ ֆիլմեր: Նկարահանվել է իր և ուր. ռեժ-ների ֆիլմերում:

ՋԵՐՄԻՑԱԶՑՆՈՂ ԴԵՂԱՆՅՈՒԹԵՐ, մարմնի բարձրացած ջերմաստիճանը նվազեցնող դեղանյութեր, որոնք ազդում են ջերմակարգավորման կենսընթացների վրա. ունեն նաև ցավը հանգստացնող և հակաբորբոք. հատկություններ:

ՋԵՐՄՀԱՂՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍԱՐՈՒՄ, դիֆերենցիալ հավասարում՝ 2-րդ կարգի մասնակի ածանցյալներով, որը նկարագրում է միջավայրում ջերմության տարածման շարժընթացը: Պարզագույն դեպքում ունի հետևյալ տեսքը՝

$$\frac{\partial T}{\partial t} = a^2 \frac{\partial T}{\partial x^2},$$

որտեղ T(x,t)-ն որոնելի ֆունկցիան է՝ x կոորդինատով կետի ջերմաստիճանը ժամանակի t պահին, a^2-ն՝ ջերմաստիճանահաղորդականության գործակիցը:

ՋԵՐՄՀԱՂՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, էներգիայի փոխանցումը մարմնի առավել տաք հատվածներից սառը հատվածներ: Հանգեցնում է մարմնի ջերմաստիճանի համահավասարեցման: Սովորաբար փոխանցվող էներգիայի քանակը, որ կոչվում է ջերմ. հոսքի խտություն, համեմատական է ջերմաստիճանի գրադիենտին (Ֆուրյեի օրենք), համեմատականության գործակիցը՝ Ջ-ի գործակից:

ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԷՖԵԿՏ, մոլորակների (Երկիր, Վեներա ևն) մթն-ի ստորին շերտերի տաքացումը՝ պայմանավորված Արեգակի ճառագայթման (օպտիկ. տիրույթում) հիմն. մասի՝ մթն-ով անցունակությամբ և մթն-ից մոլորակի տաքացած մակերևույթից անդրադարձած ԵԿՃ-ի հիմն. մասի կլանմամբ: Երկրի մթն-ում ճառագայթումը կլանում են H_2O, CO_2, CH_4-ի, O_3 և այլ գազեր: Ջ. է. բարձրացնում է մոլորակի միջին ջերմաստիճանը, մեղմացնում ցերեկ. և գիշեր. ջերմաստիճանների տարբերությունը: Մարդու ազդեցությամբ CO_2-ի և որոշ այլ ջերմոց. գազերի պարունակությունը մթն-ում մեծանում է, որը կարող է հանգեցնել կլիմայի համամոլորակ. փոփոխությունների:

ՋԵՐՄՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱՐԺԵՔ, ջերմության միավոր քանակին էներգետիկորեն համարժեք աշխ-ի քանակը՝ Ջ. մ. հ., հավասար է 4,1868 *Ջ/կալ*: ՄՄՀ-ում, որտեղ ջերմության և աշխ-ի միավորները նույնն են՝ *Ջոուլ*, Ջ. մ. հ. = 1:

ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆ, *ջերմության քանակ*, ջերմփոխանակության էներգետիկ. բնութագիրը, որոշվում է էներգիայի այն քանակով, որ ստանում (տալիս) է մարմինը (ֆիզ. համակարգը) ջերմփոխանակության ընթացքում: Մարմնին հաղորդած Ջ-յան քանակը կախված է ոչ միայն նրա սկզբն. և վերջն. վիճակներից, այլև շարժընթացի տեսակից: Ջ-յան տարր. քանակը՝ $dQ = CdT$, որտեղ C-ն տվյալ շարժընթացում մարմնի ջերմունակությունն է, dT-ն՝ ջերմաստիճանի փոքրագույն փոփոխությունը: Չափվում է *Ջ կալ*-ով:

ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆ ԱՅՐՄԱՆ, նյութի լրիվ այրման ժամանակ անջատվող ջերմության քանակությունը: Վառելանյութի Ջ. ա. (ջերմատվություն) որոշվում է նրա քիմ. բաղադրությամբ: Վառելանյութի միավոր զանգվածին կամ ծավալին վերաբերող Ջ. ա. կոչվում է **տեսակարար** Ջ. ա.: Ջ. ա. կախված է առաջացած նյութի ագրեգատ. վիճակից, օր.՝ եթե ջուրն այրման արգասիքներում հեղուկ է, Ջ. ա. բարձր է, եթե գոլորշի է՝ ցածր:

ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ, պարզ նյութերից քիմ. միացության առաջացման ռեակցիայի ջերմ. էֆեկտը ստանդարտ պայմաններում: Ջ. ա-ների արժեքները տրվում են թերմոդինամիկ. տեղեկատուներում և օգտագործվում ցանկացած ռեակցիայի ջերմ. էֆեկտը հաշվելու համար:

ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆ ԳՈԼՈՐՇԻԱՑՄԱՆ, եռման ջերմություն, ջերմության քանակություն, որն անհրաժեշտ է հաստատուն ճնշման և ջերմաստիճանի պայմաններում հաղորդել նյութին, այն հեղուկ վիճակից գազայինի (գոլորշու) փոխակերպելու համար: Նյութի միավոր զանգվածի Ջ. գ. կոչվում է **տեսակարար Ջ. գ.**:

ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԱԼՄԱՆ, ջերմության քանակություն, որն անհրաժեշտ է հաստատուն ճնշման և ջերմաստիճանի պայմաններում հաղորդել պինդ բյուրեղ. նյութին՝ այն ամբողջությամբ հեղուկ վիճակի փոխակերպելու համար: Նյութի միավոր զանգվածի Ջ. հ. կոչվում է **տեսակարար Ջ. հ.**:

ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆ ՖԱՋԱՅԻՆ ԱՆՑՈՒՄ-ՆԵՐԻ, ջերմության քանակություն, որն անհրաժեշտ է հաստատուն ճնշման և ջերմաստիճանի պայմաններում հաղորդել նյութին՝ մի ֆազից մյուսին նրա հավասարակշռ. անցման համար: Նյութի միավոր զանգվածի Ջ. ֆ. ա. կոչվում է **տեսակարար Ջ. ֆ. ա.**: Ջ. ֆ. ա. առկայությունը 1-ին կարգի ֆազ. անցումների (հալման, եռման, սուբլիմման) բնութագր. հատկանիշներից է:

ՋԵՐՄՈՒԿ, ք. (1967-ից) ՀՀ Վայոց ձորի մարզում՝ Արփայի գետահովտում՝ 2070 *մ* բարձր-յան վրա: Բն.՝ 6,2 հզ. (2012): Շրջակայքում կան հանք. տաք ջրերի ելքեր (ջերմուկներ, որոնց հետ է կապված քաղաքի անվանումը), բուժիչ ցեխ և ապակու հումք՝ քվարցիտներ: Տնտ-յան առաջատար ճյուղը *«Ջերմուկ»* հանք. ջրի արտադր-յունն է, որն իրականացնում են *«Ջերմուկ Գրուպ»* ընկ-ն ու «Ջերմուկ» հանք. ջրերի շշալցման գործարանը: 1-ին անգամ հիշատակել է Ստեփանոս Օրբելյանը (XIII դ.): Ջ. բալնեոլոգ. (ընկելային, բարձրլեռն. կլիմ.) առողջարան է (հիմն.՝ 1935): Հանք. ջրերն ածխաթթվային, հիդրոկարբոնատ-սուլֆատ-քլորիդային, նատրիում-կալցիում-մագնեզիումային ջրերի շարքից են: Առող.ջարան. բուժման համալիրն ընդգրկում է հանք. տաք ջրի ներքին ու արտաքին օգտագործումը, քայլաբուժությունը, կլիմ. և ֆիզիոթերապևտիկ միջոցառումները, առող.ջարանային ռեժիմը: Ունի նաև օդաարևաբուժարան: Ջ-ում բուժվում են ստամոքսաղիք. համակարգի, լյարդի, լեղուղիների, ենթաստամոքս. գեղձի, հենաշարժ. ապարատի, ծայրամաս. նյարդ. համակարգի, գինեկոլոգ. հիվանդություններով և նյութափոխանակության խանգարումներով տառապողները:

«ՋԵՐՄՈՒԿ», ածխաթթվական, սիլիկատային, հիդրոկարբոնատ-սուլֆատային, նատրիումական, բարձր ջերմաստիճանի հանք. ջուր՝ ՀՀ Վայոց ձորի մարզում՝ Ջերմուկ ք-ի տարածքում. ընդգրկում է Արփա գետի հնահովտի սարավանդը և կիրճը: Հանքայնացումը՝ 4,3 *գ/լ*, CO_2-ի պարունակությունը՝ 0,5 *գ/լ*, շահագործման պաշարները՝ 1470 *մ³/օր*: Ջրաբուժ. հատկություններով նման է Ժելեզնովոդսկի (ՌԴ) և Կառլովի Վարիի (Չեխիա) հանք. ջրերին: «Ջ.» օգտագործվում է խմելու, լոգանքների, ստամոքսաղիք., լյարդի, լեղուղիների, շաքարախտի և այլ հիվանդությունների բուժման համար: Հանք. ջրի հիմքի վրա գործում է «Ջերմուկ» առող-ջարան. համալիրը:

«ՋԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊ ՓԲԸ», «Ջերմուկ» հանք. և «Բյուրեղ» աղբյուրի ջրերի արտադր-յան ձեռն. ՀՀ-ում: Հիմնադրվել է 1999-ին: Կենտրոնատեղին՝ ք. Ջերմուկում:

ՋԵՐՄՈՒԿԻ ՋՐՎԵԺ, ՀՀ Վայոց ձորի մարզում՝ Ջերմուկ ք-ում: Սկզբնավորվում է աղբյուրներից՝ մոտ 60 *մ* բարձր-ից, 3 գմբեթաձև դարավանդներով թափվում Արփա գետը:

ՋԵՐՄՈՒԿԻ ՍԱՐԱՎԱՆԴ, Արփայի և Եղեգիսի վերին ավազանում՝ ՀՀ Վայոց ձորի մարզում: Բարձր.՝ 2250–3400 *մ*: Կազմված է հրաբխ. (բազալտ, անդեզիտ, անդեզիտաբազալտ և անդեզիտադացիտ), հիմքում՝ հրաբխածին-նստվածք. ապարներից: Մակերևույթը բլրաալիքավոր է՝ ծածկված քարացրոններով: Հվ-ում ունի աստիճանաձև մակերևույթ: Հս-ում միջօրեականի ուղղությամբ ձգվում են խոր հովիտներով առանձնացած լավային լեզվակներ: Կան հանք. աղբյուրների ելքեր: Լանդշաֆտը լ-տափաստանային և լ-մարգագետնային է: Ջ. ս-ում է Ջերմուկ ք. և համանուն առող.ջարան. համալիրը:

ՋԵՐՄՈՒԿՆԵՐ, ստորերկրյա ջրեր, որոնց ջերմաստիճանը բարձր է 20°C-ից (բացարձակ թերմեր) կամ տվյալ վայրի օդի տարեկան միջին ջերմաստիճանից (հարաբեր. թերմեր): Ջ. տաքանում են երկրի ընդերքի ջերմության հաշվին՝ երիտասարդ հրաբխ. գործունեության շրջաններում, որտեղ ոչ մեծ խոր-յունների ապարները դեռևս սառած չեն: Ըստ գազերի պարունակության՝ Ջ. մեծ մասամբ ազոտային են, հանդիպում են նաև ածխաթթվային, մեթան. և ածխաթթու-ծծմբային տարբերակներ:

ՋԵՐՄՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, ջերմության քանակ, որն անհրաժեշտ է մարմնի ջերմաստիճանը 1K-ով բարձրացնելու համար: Ավելի ճշգրիտ՝ մարմնի ստացած ջերմության քանակի և նրա ջերմաստիճանի բարձրացման հարաբերությունն է, երբ վերջինս անվերջ փոքր է: Նյութի զանգվածի 1 միավորի Ջ. կոչվում է տեսակարար Ջ.:

ՋԵՐՈՄ (Jerome) Ջերոմ Կլապկա (1859–1927), անգլիացի գրող: Հեղինակ է «Երեք-քը մի նավակում չհաշված շունը» (1889, հայ.՝ 1982) երգիծ. վիպակի, «Երեքը՝ հեծանիվով» (1900), «Պոլ Քելվեր» (1902), «Էնթոնի Ջոն» (1923) վեպերի, «Պարապ մարդու պարապ մտքերը» (1889), «Մի ուխտագնացության օրագիր և վեց ուրվագիծ» (1891) պատմվածքների, «Արևամուտ» (1888), «Չորրորդ հարկի կենվորը» (1908) պիեսների և այլ գործերի: 1894–96-ին հայկ. կոտորածների ժամանակ քննադատել է թուրք բարբարոսներին ու նրանց «քաղաքակիրթ» հովանավորողներին: Հայ. հրատարակվել են նաև «Նոր ցնորք» (1902), «Փեսացուներ և հարսնացուներ» (1905) պատմվածքները:

ՋԵՔՍՈՆ (Jackson) Էնդրյու (1767–1845), ԱՄՆ-ի 7-րդ նախագահը՝ 1829–37-ին: ԱՄՆ-ի դեմոկրատ. կուս-յան հիմնադիրներից (1828):

ՋԵՔՍՈՆ Մայքլ (1958–2009), ամերիկացի փոփ երգիչ (տենոր): Ճանաչվել է փոփ երաժշտության «արքա»: Տարածված երգերից են՝ «Թրիլլեր», «Բիլլի Ջին», «Bad» ևն: «Ռոբոտ» և «Լուսանի քայլվածք» պար. ոճերի հիմնադիրը: Թողարկել է 10 ալբոմ (1972–2001): Երգերի կատարումները համադրել է էքսցենտրիկ պարերով: «Գրեմմի» 15 մրց.:

ՋԵՔՍՈՆ Ջոն Հյուինգս (1835–1911), անգլիացի նյարդաբան: Աշխ-ները վերաբերում են գլխուղեղի կեղևում շարժիչ կենտրոնների տեղադրությանը, աֆազիային ևն: Ջ-ի անունով է կոչվել *էպիլեպսիայի* ձևերից մեկը:

ՋԵՖԵՐՍՈՆ (Jefferson) Թոմաս (1743–1826), ամերիկացի պետ. և հաս. գործիչ, լուսավորիչ, ԱՄՆ-ի 3-րդ նախագահը՝ 1801–09-ին: ԱՄՆ-ի Անկախության հռչակագրի նախագծի (տես *Անկախության հռչակագիր 1776*) հեղինակը: 1790–93-ին՝ պետքարտուղար, 1797–1801-ին՝ փոխնախագահ:

ՋԵՖԵՐՍՈՆ Ջոզեֆ (1829–1905), ամերիկացի դերասան: Վ. Իրվինգի նովելի գր. հերոսը՝ Ռիպ Վան Վինքլը, Ջ-ի դերակատարմամբ ամերիկ. բեմում ձեռք է բերել ազգ. հերոսի նկարագիր:

ՋԵՖՐԻՍ (Jeffreys) Հարոլդ (1891–1989), անգլիացի մաթեմատիկոս, վիճակագիր, երկրաֆիզիկոս և աստղագետ: Լոնդոնի թագավոր. ընկ-յան (1925), ԱՄՆ ԳԱԱ (1945) անդամ: Եղել է Թագավոր. աստղագիտ. ընկ-յան նախագահ (1955–57): Աշխ-ները վերաբերում են Երկրի շարժման, կառուցվածքի և զարգացման ուսումնասիրությանը, ինչպես նաև Արեգակն. համակարգի առաջացման և աշխարհագր. լայն-յունների տեսությանը:

«ՋԸՌՆԸԼ ՕՖ ԱՐՄԵՆԻԸՆ ՍԹԱԴԻՍ» («Journal of Armenian Studies» – «Հայագիտական ուսումնասիրությունների հանդես»), հայագիտ. եռամսյա հանդես: Հայագիտ. ուսումնասիրությունների և հետազոտությունների ազգ. ընկերակցության հրտ-յուն [1975-ից, կանոնավոր՝ 1985–2004-ին, Բելմոնտ (ԱՄՆ)՝ անգլ.]: Խմբ.՝ Բարբարա Մերկերյան:

«ՋԸՌՆԸԼ ՕՖ ԴԸ ՍԸՍԱՅԹԻ ՖՕՐ ԱՐՄԻՆԻԸՆ ՍԹԱԴԻՍ» («Journal of the Society for Armenian Studies» – «Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցության հանդես»), հայագիտ. տարեգիրք (1984-ից, Ֆրեզնո՝ անգլ.): Խմբ-ներ՝ Ավետիս Սանճյան, Դենիս Փափազյան, Ջոն Գրեպպին:

ՋԻԲՐԱԼԹԱՐ (Gibraltar), Մեծ Բրիտանիայի տիրույթը (1713-ից) Պիրենեյան թ-կղզու հվ-ում՝ *Ջիբրալթարի նեղուցի* ափին: Իսպանիայից բաժանված է չեզոք գոտիով: Տարածքը՝ 6,5 *կմ²*, բն.՝ 33,1 հզ. (2014): Պետ. լեզուն՝ անգլ.: Ջ-ի նկատմամբ իրավունքները վիճարկում է Իսպանիան:

ՋԻԲՐԱԼԹԱՐԻ ՆԵՂՈՒՑ (Estrecho de Gibraltar), Պիրենեյան թ-կղզու հվ. վերջավորության և Աֆրիկայի հս-արմ. ծայրամասի միջև: Ատլանտ. օվկ-ը միացնում է Միջերկր. ծովին: Երկ.՝ 59 *կմ*, լայն.՝ 14–44 *կմ*, նվզգն խոր. նավուղում՝ 53 *մ*: Հս. ափին են Ջիբրալթար և Ալխեսիրաս, հվ. ափին՝ Տանժեր նվ-նգստ-ները:

ՋԻԲՈՒԹԻ (Djibouti), **Ջիբութիի Հանրապետություն** (République de Djibouti), պետություն Հս-արլ. Աֆրիկայում: Սահմանակից է Եթովպիային, Էրիթրեային և Սոմալիին: Տարածքը՝ 23,2 հզ. *կմ²*, բն.՝ 724 հզ. (2009): Մայրաքաղաքը՝ *Ջիբութի*: Պետ. լեզուները՝ արաբ. և ֆրանս.: Կառավարման ձևը՝ նախագահահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ Ա.ժ: Բաժանված է 5 վարչ. օկրուգների: Հավատացյալները հիմնականում մահմեդական են: Անդամակցում է ՄԱԿ-ին, Աֆրիկ. միությանը ևն: Աֆրիկայի հետամնաց երկրներից է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 2,8 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է սուրճ, կաշի, մորթի ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, սննդամթերք, դեղորայք, հագուստ ևն: Դրամ. միավորը՝ ջիբութիական ֆրանկ:

Ջ. XIX դ-ի վերջից ֆրանս. գաղութ էր (Սոմալի ֆրանս. Ափ), 1946-ից՝ Ֆրանսիայի անդրծով. տարածք: 1977-ից անկախ պետություն է: 1981-ին նախագահ Հ. Գ. Ապտիդոնը երկրում հաստատել է անձնիշխան. վարչակարգ, որի պատճառով 1991–94-ին Ջ-ում տեղի է ունեցել քաղաքաց. պատերազմ: 1999-ից Ջ-ի նախագահն Ապտիդոնի զարմիկ Ի. Օ. Գելլեն է (ծ. 1947):

ՋԻԲՈՒԹԻ, Ջիբութիի Հանրապետության մայրաքաղաքը (1977-ից), նվ-նգստ՝ Ադե-

նի ծոցի ափին: Բն.՝ 625 հզ. (2010): Ունի օդանավակայան: Հիմնադրվել է 1888–ին:

ՋԻԳԱՐԽԱՆՅԱՆ Արմեն Բորիսի (ծ. 1935), դերասան: ՀԽՍՀ (1973), ԽՍՀՄ (1985) ժող. արտիստ: 1958–ին՝ ԵՌԹ, 1969–96–ին՝ Մոսկվայի Վ. Մայակովսկու անվ. (Ստենկի՝ Թ. Ուիլյամսի ««Ցանկություն» տրամվայ», Սոկրատ՝ Է. Ս. Ռաձինսկու «Զրույցներ Սոկրատի հետ», թագավոր՝ Վ. Սարոյանի «Քարանձավի մարդիկ», ևն), 1996–2003–ին՝ «Լենկոմ» թատրոնների դերասան: 1996–ին Մոսկվայում հիմնադրել է «Ջիգարխանյան թատրոնը» (գեղ. ղեկ., 2005–ից՝ նաև տնօրեն): Նկարահանվել է կինոյում («Բարև, ես եմ», 1965, «Եռանկյունի», 1967, «Սգավոր ձյունը» ըստ Ա. Թրուայայի, 1978, երեքն էլ՝ հայֆիլմ, «Երբ գալիս է սեպտեմբերը», 1976, «Թեհրան-43», 1981, երկուսն էլ՝ Մոսֆիլմ) ևն: Ջ. ստեղծել է նուրբ, դիպուկ, ճշմարտացի, խոր հոգեբ. կերպարներ:

ՀՀ Պետ. (1975, 1979), համահայկ. «Վահազն» (2002) մրց–ներ, ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (1996), «Պատվո նշան» (2010), ՌԴ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 3–րդ (1995), 4–րդ (2005), 2–րդ (2010) աստիճանների, «Սբ Ալեքսանդր Նևսկի» (2006) շքանշաններ:

ՋԻԴԱՆ, ք–նվինզստ Սաուդյան Արաբիայի արմ–ում՝ Կարմիր ծովի ափին: Բն.՝ 3,2 մլն (2010): Ջ–ից ուխտավորները հաջի են մեկնում Մեքքա և Մեդինա:

ՋԻԼԱՍ (Djilas) Միլովան (1911–1995), հարավսլավացի քաղաքագետ, հրապարակախոս: 1950–60–ական թթ–ին իշխող քաղ. ղեկավարությանը քննադատելու համար բազմիցս ազատազրկվել է: Մեծ ճանաչում են ստացել նրա «Զրույցներ Ստալինի հետ» և «Իմ ընկերությունը Տիտոյի հետ» (երկուսն էլ՝ 1961) գրքերը:

ՋԻԼԱՎՅԱՆ Գագիկ Արամի (ծ. 1956), ուռուցքաբան–գինեկոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (2002): Աշխ–ները վերաբերում են կանանց սեռ. օրգանների չարորակ ուռուցքների կանխարգելման և բուժման խնդիրներին:

ՋԻԼԻ (Gigli) Բենիամինո (1890–1957), իտալացի երգիչ (տենոր): 1920–32–ին՝ Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերա», 1932–ից՝ Միլանի «Լա Սկալա» թատրոնների մենակատար (Նեմորինո՝ Գ. Դոնիցետտիի «Սիրո ըմպելիք», Լոհենգրին՝ Ռ. Վագների «Լոհենգրին», ևն): Կատարել է նաև նեապոլյան երգեր, նկարահանվել կինոյում («Ավե Մարիա», 1936, «Պայացներ», 1943, ևն):

ՋԻԼԻ ՔՐՈՄԻՏԻ ՀԱՆՔԱՎԱՅՐ, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Սևանա լճի արլ. ափին՝ Ջիլ գ–ից մոտ 2 *կմ* հս–արմ. ու հվ–արլ.: Հայտնաբերվել է 1920–ական թթ–ին, շահագործվել՝ 1942–51–ին: Տեղադրված է Ջիլ–Խաչ գաբրո–պերիդոտիտային զանգվածի հս–արմ. մասում՝ լայնակի ուղղության դունիտ. տեղամասում: Cr_2O_3–ի պարունակությունը՝ 20–46 %: Կազմված է 3 հանք. տեղամասերից. Cr_2O_3–ով առավել հարուստ է «Գլխավոր երակ» տեղամասը: Պաշարները՝ մոտ 3 հզ. *տ*:

ՋԻԼԻ, Ջողա, Հայկ. լ–աշխարհի հվ–արլ–ում, Կորդվաց լ–ների ամենաբարձր լ–գագաթը (4168 *մ*): Հայկ. լ–աշխարհի՝ բարձրյամբ 3–րդ լ–գագաթն է (Մեծ Մասիսից, Սիփանից հետո): Ծալքաբեկորային է՝ կազմված մեզոզոյի թերթաքարերից, քվարցիտներից, մերգելներից: Գագաթին կան հնագույն սառցապատման հետքեր:

ՋԻՀԱԴ (արաբ. – բառացի՝ եռանդ, ջանք), «սրբազան պատերազմ», որը, ըստ Ղուրանի որոշ դրույթների, պետք է մղեն մահմեդականները «անհավատների» դեմ: Համաձայն մահմեդ. օրենսգետների ուսմունքի՝ աշխարհը բաժանվում է «ար ալ–իսլամի» [«իսլամի (կամ հավատի) մարզ»] և «դար ալ–հարբի» («պատերազմի մարզ», որտեղ ապրում են «անհավատները»), և Ջ–ին մասնակցելը յուրաքանչյուր մարտունակ մահմեդականի սրբազան պարտքն է:

ՋԻՄԲԻՆՈՎ, Բեմ Օկոնովիչ (1914–1986), կալմիկ բանաստեղծ: Կալմիկիայի ժող. բանաստեղծ (1985): Հեղինակ է «Ծաղիկները քարի վրա» (1972), «Արմավենին և եղևնին» (1974) բանաստեղծությունների ու պոեմների ժող–ների:

ՋԻՆ, ոգի արաբ. դից–յան մեջ, որը հետագայում վերածվել է *խպամի* ուսմունքի մասի, որտեղ հանդես են գալիս որպես անմաքրության մարմնացում, ինչպես սատանան և չարքերը՝ քրիստոնեության մեջ:

ՋԻՆ (անգլ.՝ gin), թունդ սպիրտ. խմիչք: Ստացվում է կրկնաթորված կամ աշորայի հում սպիրտը գիհիի չոր պտուղների հետ թորելով: Տարածված է ԱՄՆ–ում, Մեծ Բրիտանիայում, Նիդեռլանդներում:

ՋԻՆԱՆՅԱՆ Հրաչուհի Հարությունի (1919–2012), դերասանուհի, ասմունքող: ՀՀ ժող. արտիստ (1977): Պրոֆ. (1984): Հայկարամ *Ութաղյանի* կինը, Արթուր *Ութաղյանի* մայրը: 1941–ից՝ Հայկ. ռադիոյի հաղորդավար, 1951–ից՝ մենակատար: Ստեղծել է մի շարք ռադիոբեմադրություններ (Շիրվանզադեի «Արտիստը», Հ. Շիրազի «Միամանթո և Խչեզարե», ևն):

ՀՀ «Սիվսես Խորենացի» մեդալ (2001):

ՋԻՆԻ ԳՈՐԾԱԿԻՑ, ցուցանիշ, որը վիճակագրության մեջ օգտագործվում է ուսումնասիրվող հատկանիշի կենտրոնացման աստիճանի կամ ըստ վիճակագր. համախմբի միավորների ու խմբերի դրա բաշխման անհամաչափության գնահատման համար: Անհամաչափությունը կարող է դրսևորվել՝ ըստ բնակչության խմբերի եկամուտների, ըստ երկրի տարածաշրջանների աշխ. պաշարների, ըստ վարկ. կազմ–յունների ակտիվների բաշխման և այլ ձևերով: Ջ. գ. փոփոխվում է 0–ից 1 տիրույթում. եթե ձգտում է 1–ի, ապա բաշխումը ծայրահեղ անհավասար է:

ՋԻՆԻՇՅԱՆ ՀԻՇԱՏԱԿԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ, բարեգործ. կազմ–յուն, հիմնադրել է Վարդան Ջինիշյանն ԱՄՆ–ում 1966–ին՝ ի հիշատակ ծնողների՝ Հարություն և Կատրին Ջինիշյանների: Ի սկզբանե հիմնադրամի ծառայություններն ուղղված էին Մերձ. Արևելքի երկրների կարիքավոր հայերին: 1993–ից գործում է նաև ՀՀ–ում (պաշտոն. գրանցումը՝ 1999–ին): Իրականացնում է համայնքների զարգացման, առողջապ., նյութ. օգնության, հոգևոր վերելքի, գործարարության զարգացման, բնակարանաշինության և այլ ծրագրեր:

ՋԻՆՆԱ Մուհամմեդ Ալի (1876–1948), մահմեդ. քաղ. գործիչ: 1914–ից՝ Մահմեդ. լիգայի առաջնորդը: Հանդես է եկել բրիտ. Հնդկաստանի անկախության պահանջով: 1940–ից ղեկավարել է Պակիստանի Իսլամ. Հանրապետության ստեղծման համար սկսված շարժումը: Պակիստանի 1–ին գեն–նահանգապետը՝ 1947–48–ին:

ՋԻՆՍ (Jeans) Ջեյմս Հոփվուդ (1877–1946), անգլիացի ֆիզիկոս և աստղաֆիզիկոս: Աշխ–ները վերաբերում են գազերի կինետիկ տեսությանը, ջերմ. ճառագայթմանը, էլեկտրադինամիկային, տես. մեխանիկային, աստղ. համակարգերի և միգամածությունների կազմությանն ու էվոլյուցիային: Հայտնաբերել է ճառագայթման օրենքը (1905–09, Ջ. Ու. *Ռեվեյից* անկախ), որը հետագայում կոչվել է *Ռեվեյ–Ջինսի օրենք*: 1919 և 1928–ին առաջարկել է տիեզերածնության Ջինսի վարկածը, ըստ որի՝ մոլորակներն առաջացել են Արեգակի մոտով անցնող որևէ աստղի ձգողությամբ նրանից պոկված նյութից:

ՋԻՈԿ (Գիոկ, Giauque) Ուիլյամ Ֆրենսիս (1895–1982), ամերիկացի ֆիզքիմիկոս: Աշխ–ները վերաբերում են ցածր ջերմաստիճաններում նյութերի թերմոդինամիկ. հատկությունների ուսումնասիրությանը: Աշակել է (1927) ադիաբատ ապամագնիսացման եղանակը՝ 1 Կ–ից ցածր ջերմաստիճան ստանալու համար: Նորելյան մրց. (1949):

ՋԻՋՅԱՆ Ռոբերտ Ջալիբեկի (ծ. 1937), փիլ.: Փիլ. գիտ. դ–ր (1986), պրոֆ. (1986): Աշխ–ները վերաբերում են ձևական տրամաբ–յան և բնագիտ. մեթոդաբան. խնդիրներին:

ՋԻՎԱՆ ԼՈՒՍԻՆՅԱՆ, Ճուան Լուսինյան, Կոստանդին Բ (ծ. թ. անհտ–1344), Կիլիկյան Հայաստանի պայ՝ 1330–ից: *Լևոն Գ*–ի դուստր Զաբելի և Կիպրոսի Ամորի II Լուսինյան թագավորի որդին: Հաջորդել է 1329–ին սպանված *Օշին* պայլին: *Լևոն Ե*–ի առեղծված. մահից (1342) հետո Ջ. Լ. Հայոց գահը հանձնել է եղբորը՝ Գվիդոն (Կի) Լուսինյանին (տես *Կոստանդին Գ*), և մինչև վերջինիս ժամանումը (1344) ճանաչվել է թագապահ: Սպանվել է Ադանայում՝ Օշին Բակուրան իշխանի ապստամբության ժամանակ: Ավագ որդուն՝ *Լևոն Զ*–ին, ունիթորները 1374–ին հռչակել են թագավոր:

ՋԻՎԱՆԻ (Լևոնյան Սերոբ Ստեփանի, 1846–1909), աշուղ, ժող. երգիչ, աշուղ. արվ–ի ազգ. դպրոցի հիմնադիրը: Գաբեգին *Լևոնյանի* հայրը: 1868–95–ին ապրել է Ալեքսանդրապոլում, այնուհետև՝ Թիֆլիսում: Մեզ է հասել Ջ–ու շուրջ 800 երգ: Լույս են տեսել Ջ–ու «Աշըգ Ջիւանու երգերը» (1882), «Ջիւանու քնարը» (հ. 1–2, 1900), «Յերգերի ժողովածուն» (1936), «Երգեր» (նոտագրված, կազմ.՝ Մ. Աղայան, Շ. Տայան, 1955), «Ջիվանու քնարը» (առաջաբ.՝ Ա. Սահակյանի, 1959), «Երգեր» (առաջաբ., ծնթգր.՝ Ա. Սահակյանի, 1988), «Անհայտ երգեր» (1996), «Ծիրանի ծառ: Հատընտիր» (1996), «Աշուղ Ջիվանի: Անհայտ երգեր» (աշխատասիր.՝ Թ. Պողոսյանի, 2009) ժող–ները: Ամեն տարի հունիսի վերջին կիրակի օրը Կարծախում կազմակերպվում է Ջ–ու երգի տոն:

ՋԻՎԱՆՅԱՆ Ալվարդ Հակոբի (ծ. 1964), գրականագետ, թարգմանիչ: Բանասիր. գիտ. դ–ր (2009), պրոֆ. (2016): Հեղինակ է «Երկնքից ընկավ երեք խնձոր. հայկական հեքիաթը որպես արքիտեքստ» (2008), «Ոճական փոխակերպումները հրաշապատում հեքիաթում» (2007) մենագրությունների, «Հմայված հոգիների պարտեզում. մանկական գրականության տեսության խնդիրներ» (2016) աշխ–յան: Թարգմանել է Ջ. Բարրիի, Ջ. Ռոուլինգի, Ա. Միլնի և ուր. գործերից:

ՋԻՎԱՆՅԱՆ Կարինե Արամի (ծ. 1939), կենդանաբան–հյուսվածաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1990), պրոֆ. (1991): Հակոբ *Ջի–*

վանյանի քույրը: Աշխ-ները վերաբերում են ողնաշարավոր կենդանիների ներքին օրգանների վերականգնման և փոխհատուցման-հարմարող. շարժընթացներին:

ՋԻՎԱՆՅԱՆ Հակոբ Արամի (1936–2016), ճարտ., նկարիչ, քանդ.: ՀՀ վաստ. ճարտ. (2011): Կարինե *Ջիվանյանի* եղբայրը: 1983–89-ին՝ Գյումրիի գլխ. նկարիչ, 1989–92-ին՝ գլխ. ճարտ.: Ջ-ի նախագծերով Գյումրիում կառուցվել են բնակելի տներ, աղբյուր-հուշարձաններ (1961–73), Անիի 1000-ամյակի կոթողը (1984), ՀՄՊ-ում զոհված մարտիկներին նվիրված հուշարձաններ (գ. Ազատան, 1980, ևն), կերտել է Մ. Ավետիսյանի մահարձանը (1977), ստեղծել գեղանկարչ. գործեր («Երևկո», «Բակ Լենինականում» ևն), խաչքարեր: ՀԼԿԵՄ (1971), ՀԽՍՀ Պետ. (1981) մրց-ներ:

ՋԻՎԱՆՇԻՐ, Ջևանշեր, Ջվանշեր, Գարդմանի տերը և Աղվանից իշխան՝ 637-ից՝ Միհրանյանների իշխան. տոհմից: *Վարազ Գրիգորի* որդին: Եղել է Աղվանք կամ Հայոց արևելից կողմանց (Ուտիք և Արցախ) երկրամասի գահերեց իշխան և սպարապետ: Ջ-ի պատվերով է *Մովսես Կաղանկատվացին* գրել իր երկը: Նրա մահվան առիթով *Դավթակ Քերթողը* գրել է «Ողբք ի մահին Ջեւանշիրի՝ մեծի իշխանին» (հրտ.՝ 1986) դամբանականը:

ՋԻՎԵԼԵԳՈՎ (Ջիվելեգյան) Ալեքսեյ Կարապետի (1875–1952), պատմաբան, արվեստաբան, թարգմանիչ: ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1945): Գրել է ռուս.: 1898–1939-ին՝ «Գրանատ հանրագիտական բառարանի» պատ. քարտուղար, այնուհետև՝ հրտչ-յան վարչության նախագահ: Հեղինակ է «Ջեյթունյան հերոսապատում» (1899), «Միջին դարերի քաղաքային համայնքը» (1901), «Հայերը Ռուսաստանում» (1906), «Գ. Ա. Ջանշիևը և Հայկական հարցը» (1907), «Թուրքական Հայաստանի ապագան» (1911), «Ալեքսանդր I և Նապոլեոն» (1915), «Ժան Պոլ Մարատ» (1923), «Իտալական Վերածննդի ուրվագծեր» (1929), «Հայաստանը և Թուրքիան» (1946), «Իտալական ժողովրդական կատակերգությունը» (հրտ.՝ 1954), «Ֆրանսիական թատրոնի ժողովրդական հիմքերը» (հրտ.՝ 1955) աշխ-ների: Կատարել է նաև թարգմ-յուններ:

ՋԻՐԱԼԴԻ ՉԻՆՋԻՈ (Giraldi Cinzio) Ջամբատիստա (1504–1573), իտալացի գրող: Նորեվրոպ. ողբերգության հիմնադիրը և տեսաբան: Հեղինակ է «Դատողություն կատակերգություններ և ողբերգություններ գրելու մասին» (1543, հրտ.՝ 1554) տրակտատի, «Օրբեքե» (1541, հրտ.՝ 1543) և այլ ողբերգությունների:

ՋԻՈՒ-ՋԻՑՈՒ, ինքնապաշտպ-յան և առանց զենքի հարձակման ճապոն. համակարգ. հիմն. հնարքներն են՝ հարվածները մարմնի առավել խոցելի տեղերին, հոդերի ոլորումը (նետումներով) ևն: Ծագել է X դ-ում:

ՋԼԱՆԽՅԱՆ Քրիստափոր Միքայելի (1905–1994), խորհրդ. բանակի գեն-մայոր (1955): Ռազմ. գիտ. դ-ր (1957), պրոֆ.: ՀՄՊ-ի ժամանակ մասնակցել է Ուկրաինայի պաշտպ-յանը, ապա որպես 298-րդ հրաձգ. (հետագայում՝ 80-րդ գվարդ.) դիվիզիայի շտաբի պետ՝ Ստալինգրադի և Կուրսկի ճակատամարտերին, Դնեպրի գետանցմանը, 1944-ին (68-րդ հրաձգ. կորպուսի շտաբի պետ)՝ Ուկրաինայի, Մոլդովիայի, Բուլղարիայի, Հարավսլավիայի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի տարածքներում մղված ռազմ. գործողություններին:

Լենինի, ԽՍՀՄ Կարմիր դրոշի (4), Մ. Ի. Կուտուզովի 2-րդ, Բ. Մ. Խմելնիցկու 2-րդ, ՀՄՊ 1-ին աստիճանների, Կարմիր աստղի (2) շքանշաններ:

ՋԼՄԱՐ, Ջղմար, Ջայլամար, բերդ Կորճայք նահգ-ի Ճահուկ գավ-ում՝ Մեծ Ջավ գետի աջ ափին: Ըստ Թովմա Արծրունու հիշատակած ավանդության՝ Ջ. մ. թ. ա. II դ-ի 1-ին կեսին հիմնադրել է Կորդվաց իշխանուհի Ջայլումարը: Մինչև XI դ. եղել է Վասպուրականի Արծրունիների ռազմ. կարևոր հենակետ: XIX դ-ում Ջ. Վանի վիլայեթի Հեքյարի սանջակի Ջուլամերկ կազայի կենտրոնն էր:

ՋՀԱՆԳԻՐՅԱՆ Ժորա Դանիելի (ծ. 1942), իրավաբան: Իրավաբ. գիտ. դ-ր (2004): 1990-ից՝ «Գլաձոր» կառավարման համալսարանի հիմնադիր-ռեկտոր: Աշխ-ները վերաբերում են նորանկախ պետություններում պետ. իշխանության իրականացման մեխանիզմներին, պետ. իշխանության համակարգի գործառնության և կառուցման սկզբունքներին:

ՋՂԱՋԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ճաճանչադաստակի, մկանների ոչ կամային, նոպայաձև կծկումներ. բնորոշ է նրանց ծայրահեղ լարվածությունը: Դրսևորվում են կծկման և թուլացման արագ հերթափոխությամբ (կլոնիկ Ջ.) կամ երկարատև լարվածությամբ (տոնիկ Ջ.): Առաջանում են էպիլեպսիայի, գլխուղեղի մնասվածքների, սպազմոֆիլիայի, վարակիչ և այլ հիվանդությունների դեպքերում:

ՋՂԵՐ, 1. փոխադրող խրձերի համակարգ՝ բարձրակարգ բույսերի (բացառությամբ մամուռների) տերևներում և այլ օրգաններում: 2. **Ջ. միջատների**, թևի թիթեղի սնամեջ խողովակավոր հաստացումներ, որոնցում տեղակայված են տրաքեաների և նյարդերի ճյուղավորումները. ձևավորում են թևի հիմնակմախքը: Ջ-ի փոխդասավորությունը (ջղավորումը) կարևոր կարգաբան. հատկանիշ է:

ՋՆԱՐԱՒ, ապակենման բարակ ծածկույթ խեցե իրերի վրա, որը նրանց դարձնում է գեղատես, անջրանցիկ, պաշտպանում լուծույթների (թթուներ, աղեր ևն) ներգործությունից: Հայաստանում ջնարակված անոթների և այլ իրերի վաղ նմուշներ պեղվել են Մեծամորի, Կարմիր բլուրի և այլ հնավայրերից (Դվին, Անի, Գառնի ևն): Հայաստանում ջնարակման արվ-ը ծաղկել է IX–XIII դդ-ում:

ՋՈԱԿԻՄՈՍ ՖԼՈՐԵՆՏԱՑԻ, Ջոակինո դա Ֆյորե (Gioacchino da Fiore, մոտ 1132–1202), կաթոլիկ. միստիկ, վանական: Համաշխ. պատմությունը բաժանել է 3 դարաշրջանի՝ ըստ Սբ Երրորդության 3 անձանց: Սբ Հոգու գալիք դարաշրջանում երկրի վրա թագավորելու է ազատությունը, սերը և խաղաղությունը: Ջ. Ֆ-ու ուսմունքը մեծ ազդեցություն է ունեցել հերձվածողների շարժման և քաղ. մեսսիականության վրա:

ՋՈԲՍ (Jobs) Սթիվեն Փոլ (1955–2011), համակարգչ. արդ-յան ոլորտի ամերիկացի ձեռնարկատեր: Որդեգրվել և դաստիարակվել է Փոլ և Կլարա (Հակոբյան) Ջոբսերի ընտանիքում: 1976-ին հիմնել է (Ս. Վոզնյակի հետ) «Apple Computer» (ներկայում՝ «Apple inc.») ընկ-ը: Ջ-ի ղեկավարությամբ ստեղծվել են «Apple II» (1977) անհատ. ու «Մակինթոշ» (1984) համակարգիչները: 1986-ին հիմնել է «Pixar» անիմացիոն ստուդիան: 1997–2011-ին՝ «Apple inc.» ընկ-յան գործադիր (մինչև 2009) և գլխ. տնօրեն:

ՋՈՋԵՖՍՈՆ (Josephson) Բրայան (ծ. 1940), անգլիացի ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են գերհաղորդականությանը, կրիտիկ. երևույթներին: Կանխատեսել է (1962) իր անունով հայտնի՝ *Ջոզեֆսոնի էֆեկտը*: Նոբելյան մրց. (1973):

ՋՈՋԵՖՍՈՆԻ ԷՖԵԿՏ, գերհաղորդական հոսանքի անցումը 2 գերհաղորդիչները բաժանող դիէլեկտրիկի, կիսահաղորդչի կամ մետաղի բարակ շերտով (Ջ-ի հպակ)՝ բնականոն պայմաններում: Կանխատեսել է Բ. *Ջոզեֆսոնը* (1962): Դրա հիման վրա ստեղծվել է գերհաղորդիչ քվանտ. ինտերֆերոմետրը, որի շնորհիվ ճշգրտվել են մի շարք հիմն. ֆիզ. հաստատունների արժեքները: Ջ. է. օգտագործում են կրիոգեն (սառնաստեղծ) սարքերում, Ջ-ի հպակները՝ որպես ԷՀՄ-ների արագագործ տրամար. տարրեր:

ՋՈԼԻՏՏԻ (Giolitti) Ջովաննի (1842–1928), Իտալիայի վարչապետ՝ 1892–93, 1903–05, 1906–09, 1911–14 և 1920–21-ին, Իտալիայի լիբերալ կուս-յան ղեկ.: Սկսել է 1911–12-ի պատերազմը Թուրքիայի դեմ: ԱՀՊ-ի ժամանակ նպաստել է Իտալիայի մասնակցությանը պատերազմին:

«ՋՈԿԱՏՎԱՐ», պիոներ. ամսագիր (1936–1941, Երևան), ՀԼԿԵՄ ԿԿ պաշտոնաթերթ: 1925–34-ին՝ «*Պիոներ ղեկ*», 1935–36-ին՝ «Կոլվար»: Խմբ-ներ՝ Սերոբ Սարգսյան, Գեղամ Ալեքյան, Ե. Հարությունյան:

ՋՈԿՈՎԻՉ Նովակ (ծ. 1987), սերբ թենիսիստ: «Մեծ սաղավարտի» (Ավստրալիա, 2008, 2011), Ուիմբլդոնի (2011) առաջնությունների եռակի հաղթող: Սերբիայի հավաքականի կազմում՝ Դեվիսի գավաթակիր (2010): 2011-ին՝ աշխարհի առաջին ռակետը:

ՋՈՀՈՐ ԲԱՀՐՈՒ (Johore Bahru), ք-նվինգստ Մալայզիայում, Ջոհոր նահգ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 916,4 հզ.: Բնական կաուչուկի վերամշակման խոշոր կենտրոն է:

ՋՈՂԱՍԻ ՋՐԱՄԲԱՐ, ՀՀ Տավուշի մարզում՝ Ջողասի (Ոսկեպարի ստորին հոսանքը) միջին հոսանքում՝ մոտ 650 *մ* բարձր-յան վրա: Շահագործման է հանձնվել 1980-ին: Մակերեսը՝ 2,14 *կմ²*, առվակն խոր.՝ 60 *մ*, ջրատարողությունը՝ 45 մլն *մ³*, օգտ.՝ 43 մլն *մ³*: Ջրամբարից ջուրը համանուն ջրհան կայանով մղվում էր Նոյեմբերյանի ու Իջևանի մայր ջրանցքները: Ոռոգել է մոտ 10 հզ. *հա* հողատարածք (ՀՀ և Ադրբեջանի սահմանամերձ հատված):

ՋՈՄՈԼՈՒՆԳՄԱ, Էվերեստ, Սագարմաթհա, երկրագնդի ամենաբարձր գագաթը Նեպալի և Չինաստանի սահմանին: Բարձր.՝ 8846,1 *մ*: Կան սառցադաշտեր: 1-ին անգամ նվաճել են նեպալցի լեռնագնացներ Ն. Տենցինգն ու նորզելանդացի Է. Հիլարին 1953-ին, կանանցից՝ ճապոնացի Զյունկո Տաբեյը 1976-ին:

ՋՈՅՍ (Joyce) Ջեյմս (1882–1941), իռլանդացի գրող: Հեղինակ է «Կամերային երաժշտություն» (1907) քնար. բանաստեղծությունների, «Դուբլինցիներ» (1914, հայ.՝ 1978) նովելների ժող-ների, «Արվեստագետի դիմանկարը պատանության հասակում» (1914–15, հայ.՝ 2006), «Ֆինեգանի հոգեհացը» (1939) վեպերի, «Հալածյալները» (1918) պիեսի: Ջ-ի ստեղծագործության գլուխգործոցը «Ուլիսես» (1922, հայ.՝ 2012) վեպն է, որտեղ «գիտակցության հոսք» գեղ. մեթոդի միջոցով ձգտել

է ներկայացնել իռլանդ. նյութապաշտ հաս-յան անմարդկային օրենքները: Ջ-ի շարահյուս. ավանդ. միջոցներից հրաժարումը հանգեցրել են նոր՝ փորձարար. լեզվի ստեղծման:

ՋՈՆ (John) Էլթոն (Ռեջինալդ Քեննեթ Դուայթ, ծ. 1947), անգլիացի ռոք երգիչ, կոմպոզիտոր, դաշնակահար: Ճանաչված են Ջ-ի «Ընկերոջ հուղարկավորությունը», «Մնաս բարով, դեղին աղյուսապատ ճանապարհ», «Սոմը քամու ժամանակ» երգերը: Կատարումները նվագակցել է ակուստիկ դաշնամուրով: «Գրեմմի» 6 մրց. (1986–2000):

ՋՈՆԱԹԱՆ (Jonathan) Լեաբուա Ժոզեֆ (1914–1987), Լեսոթոյի վարչապետ՝ 1965–86-ին: 1965–66-ին՝ Բասուտոլենդի վարչապետ:

ՋՈՆՍ (Jones) Հարոլդ Սպենսեր (1890–1960), անգլիացի աստղագետ (1933–55-ին՝ թագավոր.): Լոնդոնի թագավոր., ԱՄՆ ԳԱԱ և այլ ԳԱ-ների անդամ: Թագավոր. աստղագիտ. ընկ-յան (1937–39), Միջազգ. աստղագիտ. միության (1944–1948) նախագահ: Հաշվարկել է Լուսնի և Վեներայի զանգվածների նոր արժեքները, տվել «աբերացիա» և «նուտացիա» հասկացությունների նոր սահմանումներ: Ջ-ի պատվին կոչվել են խառնարաններ՝ Լուսնի և Մարսի վրա, և աստղակերպ (№ 3282):

ՋՈՆՍ Ջասպեր (ծ. 1930), ամերիկացի գեղանկարիչ, քանդ.: Ամերիկ. փոփ-արտի (Ռ. Ռաուշենբերգի հետ) հիմնադիրը: Հեղինակ է «Ամերիկյան դրոշներ» (1954-ից), «Թիրախներ» (1955-ից), «Գունավոր թվեր» (1958–59) նկարաշարերի: 1960–80-ական թթ-ի կտավներում կոլաժի տարրերն արտահայտում են խնդրահարույց հարաբերակցություն իրականության և նրա երևակայական արտացոլման միջև:

ՋՈՆՍ Ջեյմս (1921–1977), ամերիկացի գրող: Հեղինակ է «Այսուհետ և դարեդար» (1951), «Բարակ կարմիր գիծը» (1962), նաև «Միայն կանչիր» (1978), «Ուրախ մայիսը» (1971) վեպերի, նաև «Երկրորդ համաշխարհային պատերազմը» (1975) հուշագրության:

ՋՈՆՍՈՆ (Johnson) Բենջամին (Բեն, 1572–1637), անգլիացի դրամատուրգ, բանաստեղծ, դերասան: Հեղինակ է «Վոլպոնե կամ Աղվես» (1605), «Ալքիմիկոս» (1610), «Բարդուղիմեոսյան տոնավաճառ» (1614) կատակերգությունների, «Քաթլեյնի դավադրությունը» (1611) ողբերգության:

ՋՈՆՍՈՆ Էնդրյու (1808–1875), ԱՄՆ 17-րդ նախագահը՝ 1865–69-ին՝ Դեմոկրատ. կուս-յունից: 1865-ի մարտ–ապրիլին՝ փոխնախագահ: Առաջադրել է այսպես կոչված Հարավի վերակառուցման ծրագիրը՝ իվ. նինգ-ներում իշխանությունը թողնելով պլանտատորներին:

ՋՈՆՍՈՆ Լինդոն (1908–1973), ԱՄՆ 36-րդ նախագահը՝ 1963–69-ին՝ Դեմոկրատ. կուս-յունից: 1961–63-ին՝ փոխնախագահ: Ջ-ի նախագահության շրջանում ԱՄՆ սանձազերծել է պատերազմ Վիետնամում, ինտերվենցիա՝ Դոմինիկյան Հանրապետությունում, պաշտպանել Իսրայելի ագրեսիան Մերձ. Արևելքում:

ՋՈՆՍՈՆ Հյուլետ (1874–1966), բրիտանացի կրոն. և հաս. գործիչ: Աստվածաբանության դ-ր: 1931–63-ին՝ Քենթրբերիի տաճարի (Մեծ Բրիտանիա) վանահայրը: 1948-ից ղեկավարել է անգլո-խորհրդ. բարեկամության ընկ-ը, 1950-ից՝ Խաղաղության համաշխ. խորհրդի անդամ: Լենինյան միջազգ. մրց. (1951):

ՋՈՆՍՈՆ Պամելա Հաննֆորդ (1912–1981), անգլիացի գրող: Չ. Պ. ***Մաուի*** կինը: Հեղինակ է սոցիալ-հոգեբ. թեմաներով «Քրիստին» (1954, հայ.՝ 1968), «Լավ ունկնդիրը» (1975) վեպերի, «Արտասովոր Սկիպտոնը» (1959), «Գիշեր: Լռություն: Ո՞վ է այդտեղ» (1963), «Կորկ փողոցում՝ գլխարկների խանութի կողքին» (1965) երգիծ. եռերգության:

ՋՈՆՍՈՆ Սեմյուել (1709–1784), անգլիացի գրող, բառարանագիր: Հեղինակ է «Անգլերենի բառարանի» (1755), «Հաբեշստանի Ռասսելաս արքայազնը» (1759) փիլ. վիպակի, բարոյաուսուցող. էսսեի, նաև «Անգլիայի առավել նշանավոր բանաստեղծների կենսագրականները» (1779–81) աշխ-յան:

ՋՈՍԵՐ, Եգիպտոսի փարավոն՝ մ. թ. ա. մոտ 2780–60-ին: III հարստության հիմնադիրը: Վերին և Ստորին Եգիպտոսների միավորմամբ ստեղծել է հզոր պետություն՝ Մեմփիս մայրաքաղաքով: Առաջին փարավոնն է, որը բուրգ է կառուցել, որն այժմ հայտնի է իր անունով:

ՋՈՎԱՆՅՈԼԻ (Giovagnoli) Ռաֆայելլո (1838–1915), իտալացի գրող: Ջ. ***Գարիբալդիի*** զինակիցը: Հեղինակ է «Պլաուտիլլա» (1878), «Սատուռնինո» (1879), «Մեսսալինա» (1885), պատմ. «Սպարտակ» (1874, հայ.՝ 1936) և այլ վեպերի:

ՋՈՏՏՈ (Ջոտտո դի Բոնդոնե, 1266-ի և 1276-ի միջև–1337), իտալացի գեղանկարիչ: Նախավերածնունդի արվ-ի հիմնադիրներից: Կրոն. տեսարաններում ներմուծել է աշխարհիկ երանգներ, աստվածաշնչ. լեգենդները պատկերել արտասովոր կենսականությամբ: Պադուայի դել Արենա կապելլայի (1303–06) և Ֆլորենցիայի Սանտա Կրոչե եկեղեցու (մոտ 1320–25) որմնանկարներն աչքի են ընկնում կերպարների վեհությամբ և ներքին ուժով, կոմպոզիցիաների մոնումենտալ պլաստիկայով, տեկտոնիկ. պարզությամբ: Հեղինակ է Ֆլորենցիայի Սանտա Մարիա դել Ֆիորե տաճարի զանգակատան (կառուցվել է 1334-ից) նախագծի:

«ՋՈՏՏՈ» (իտալ. Giotto՝ ***Ջոտտո*** դի Բոնդոնեի պատվին, որն իր նկարներից մեկում պատկերել է ***Հալլեի գիսավորը***), Եվրոպ. տիեզ. գործակալության միջմոլորակ. ինքնաշխատ կայան՝ Հալլեի գիսավորի ուսումնասիրության համար: Զանգվածը՝ 960 *կգ*: Արձակվել է 1985-ին:

ՋՈՐԴԱՆՈ (Giordano) Լուկա (1634–1705), իտալացի գեղանկարիչ: Հեղինակ է Սանտա Մարիա դել Կարմինե եկեղեցու և Ֆլորենցիայում՝ Մեդիչի Ռիկկարդիի պալատի գրադարանի (1682–83) որմնանկարների, Մադրիդի և Էսկորիալի թագավոր. պալատների որմնանկարների (1692–97), զոհարանի նկարների:

ՋՈՐԴԱՆՈ Ումբերտո (1867–1948), իտալացի կոմպոզիտոր: Հեղինակ է «Անդրե Շենիե» (1896), «Թեոդորա» (1898), «Սիբիր» (1903) և այլ վերիստ. օպերաների (ճանաչվել են Ա. ***Տոսկանինիի*** մեկնաբանմամբ), «Կախարդական աստղ» (1928) բալետի, նվագախմբային երկերի, թատեր. երաժշտության:

ՋՈՐԻ, ձիու և ավանակի խառնածին սերունդը, որին պահում են որպես բեռնակիր: Արտաքին տեսքով նման է ձիու, հատուկ են մեծ համբերատարությունն ու ուժը:

ՋՈՐԿԱԵՖ Յուրի Ժանի (ծ. 1968), ֆրանսահայ ֆուտբոլիստ (կիսապաշտպան): Մայրը՝ Մարի Օհանյան: Խաղացել է «Ստրասբուրգ», «Մոնակո», «Պարի Սեն Ժերմեն», «Ինտեր», «Կայզերսլաուտեռն», «Բոլթոն», «Բլեքբեռն» և այլ թիմերում: Ֆրանսիայի հավաքականի կազմում դարձել է աշխարհի (1998), Եվրոպայի (2000) չեմպիոն, Կոնֆեդերացիաների գավաթի (2001), Գավաթակիրների (1996) և ՈՒԵՖԱ-ի գավաթակիր (1998): Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» շքանշան (1998), ՀՀ պատվ. քաղաքացի:

ՋՈՐՋԵՍԿՈՒ (Georgescu) Ջորջե (1887–1964), ռումին դիրիժոր: ՌՍՀ ժող. արտիստ (1954): 1920-ից՝ Բուխարեստի ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխ. դիրիժոր, 1922–40-ին (ընդմիջումներով)՝ նաև օպեր. թատրոնի տնօրեն: ՌՍՀ Պետ. մրց. (1949, 1957):

ՋՈՐՋԹՈՒՆ (Georgetown), ***Գայանայի*** մայրաքաղաքը (1966-ից), նվինգստ՝ Ատլանտ. օվկ-ի ափին: Բն.՝ 141,3 հզ. (2010): Ունի օդանավակայան: Ջ-ում է աշխարհի ամենամեծ փայտաշեն եկեղեցին (XIX դ.): Հիմնադրել են անգլիացիները 1781-ին և կոչել Գեորգ III թագավորի անունով: 1784-ից Հվ. Ամերիկայում հոլ. տիրույթների կենտրոնն էր՝ Տաբրոկ (Ստաբրուկ) անունով: 1812-ին անցել է անգլիացիներին: 1831–1966-ին եղել է Բրիտ. Գվիանայի վարչ. կենտրոնը:

ՋՈՐՋԻԱ, (Georgia), նինգ ԱՄՆ հվ-ում: Տարածքը՝ 152,5 հզ. *կմ²*, բն.՝ 10,1 մլն (2014): Վարչ. կենտրոնը՝ ***Ատլանտա***:

ՋՈՐՋՈՆԵ (Giorgione, Ջորջո Բարբարելլի դա Կաստելֆրանկո, մոտ 1477–1510), իտալացի գեղանկարիչ: Բարձր Վերածննդի արվ-ի հիմնադիրներից: Ջ-ի աշխարհիկ ոգով, ներդաշնակ, երանգներով հարուստ արվ-ն արտահայտում է մարդու և բնության միասնությունը, սիրահարվածությունը երկր. կյանքի գեղեցկությանը («Հուդիթ», մոտ 1502, «Քնած Վեներան», մոտ 1508, «Երեք փիլիսոփա», 1507–08):

ՋՈՈՒԼ (Joule) Ջեյմս Պրեսկոտ (1818–1889), անգլիացի ֆիզիկոս: Փորձնականորեն հիմնավորել է ***էներգիայի պահպանման և փոխակերպման օրենքը***, որոշել ***ջերմության մեխանիկական համարժեքը***: ***Ջոուլ–Լենցի օրենքի*** և ***Ջոուլ–Թոմսոնի*** (Ու. ***Թոմսոնի*** հետ) ***էֆեկտի*** հեղինակներից է:

ՋՈՈՒԼ, Էներգիայի, աշխ-ի և ջերմության քանակի միավոր ՄՄՀ-ում: Կոչվել է ի պատիվ Ջ. Պ. ***Ջոուլի***: Նշանակվում է Ջ-ով: 1 Ջ = 10^7 *էրգ* = 0,2388 *կալ* = $6{,}24 \cdot 10^{18}$ *էՎ*:

ՋՈՈՒԼ–ԹՈՄՍՈՆԻ ԷՖԵԿՏ, գազի ջերմաստիճանի փոփոխությունը ադիաբատ դրոսելման՝ ճնշման հաստատուն անկման տակ ծակոտկեն միջնապատով դանդաղ հոսելու դեպքում: Ցածր ջերմաստիճաններ ստանալու եղանակներից է: Բացահայտել են Ջ. Պ. ***Ջոուլը*** և Ու. ***Թոմսոնը*** 1865-ին:

ՋՈՈՒԼԻ ՕՐԵՆՔ, իդեալ. գազի ներքին էներգիան կախված է միայն ջերմաստիճանից և կախված չէ նրա խտությունից (ծավալից), սահմանել է Ջ. Պ. ***Ջոուլը*** 1845-ին:

ՋՈՈՒԼ–ԼԵՆՑԻ ՕՐԵՆՔ, որոշում է հաղորդչով էլ. հոսանք անցնելիս անջատվող ջերմության քանակը (Q): Q-ն ուղիղ համեմատական է հոսանքի ուժի քառակուսուն, հաղորդչի դիմադրությանը և ժամանակին: Հայտնաբերել են Ջ. Պ. ***Ջոուլը*** և Է. Խ. ***Լենցը*** 1840-ական թթ-ին:

ՋՈՓԼԻՆ (Joplin) Սքոթ (1867/68–1917), ամերիկացի դաշնակահար, կոմպոզիտոր: Ռեգթայմ ժանրի հիմնադիրը («Թխկենու տերև», «Ընտրյալ սինկոպաներ», «Արմավենու տերև» ևն): Առավել ճանաչվել է 1890-ական թթ–ի վերջին, նրա ստեղծագործությանը կրկին անդրադարձել են 1970-ական թթ–ին: Պուլիցերյան մրց. (1976):

ՋՎԱՐԻ, Սուրբ Խաչ եկեղեցի, ճարտ. հուշարձան (586/587–604) Վրաստանում՝ Մցխեթի մոտակայքում: Արտաքուստ՝ ուղղանկյուն, ներքուստ՝ խաչաձև, քառախորան, անկյուն. խորշերով և ուղղանկյուն սենյակներով կենտրոնագմբեթ կառույց է: Ունի հայ. արձանագրություններ և կառուցող հայ վարպետների նշաններ:

ՋՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, հիդրոլոգիա, գիտ–յուն. ուսումնասիրում է բնական ջրերը (օվկ–ներ, ծովեր, գետեր, լճեր ևն) և նրանցում ընթացող երևույթներն ու շարժընթացները: Ձևավորվել է XX դ–ի սկզբներին:

ՋՐԱԲԵՐԴ, գվո և բերդամրոց Արցախ նահանգ–ում՝ Տրտու (Թարթառ) գետի միջին հովտում: Կոչվել է գվո–ի իշխանանիստ Ջրաբերդ բերդամրոցի [Տրտու (Թարթառ) գետի և նրա Թրղի վտակի միախառնման եռանկյունում] անունով: Հավանաբար համապատասխանում է հին Մեծառանք գվո–ին: XIX դ–ում և XX դ–ի սկզբին Ջ–ի գվո է կոչվել ներկայի ԼՂՀ Մարտակերտի շրջանի տարածքը: XVI դ–ի վերջին Մելիք–Իսրայելյանները Ջ–ում ստեղծել են մելիքություն (տես *Ջրաբերդի մելիքություն*):

Ջ. բերդամրոցն առաջին անգամ հիշատակել է Մովսես Կաղանկատվացին՝ VII դ–ի սկզբի իրադարձությունների կապակցությամբ:

«ՋՐԱԲԵՐԴ», հաս–քաղ. երկշաբաթաթերթ (1932–ից, Մարտակերտ, մինչև 1966–ը՝ տարբեր անուններով):

ՋՐԱԲԵՐԴԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆ, ավատատիր. իշխանություն Արցախի *Ջրաբերդ* գվո–ում (XVI դ–ի վերջ–XIX դ–ի սկիզբ): Եղել է *Խամսայի մելիքություններից*: Ջ. մ–յան տերերը՝ Մելիք–Իսրայելյանները, սերել են *Հասան–Ջալալյաններից*: Ջ. մ. մասնակցել է XVIII դ–ի 1–ին 30–ամյակին Արցախում բռնկված ազգ–ազատագր. պայքարին:

ՋՐԱԳԱԶ, այրվող գազ. խառնուրդ, պինդ և հեղուկ վառելանյութերի գազացման արդյունքը: Ստացվում է գազագեներատորներում ջր. գոլորշու և շիկացած վառելանյութի (քարածուխ, կոքս, մազութ ևն) փոխազդեցությունից: Օգտագործվում է որպես վառելանյութ, նաև մեթիլ սպիրտի և այլ օրգ. նյութերի ստացման հումք:

ՋՐԱԳԻԾ, լողացող նավի իրանի՝ հանդարտ ջր. հորիզոն. մակերևույթի հետ շփման գիծը: Ջ. լինում են թեթև (դատարկ նավի համար), բեռնային (առավելագույն թույլատրելի սուզվածքով ընկղմված լրիվ բեռնված նավի համար) և կառուցվածք. (նախագծային սուզվածքին համապատասխանող):

ՋՐԱԳՆԴԱԿ, գնդակով մարզ. թիմ. խաղ՝ ուղղանկյունաձև (30 x 20 *մ*, խոր.՝ 1,8 *մ*–ից ոչ պակաս) լողավազանում. խաղացողները ձգտում են լողալով գնդակը նետել հակառակորդի դարպասը: Առաջին մրցումներն անցկացվել են Լոնդոնում (1869–ից): Ջ–ի կոմիտեն ստեղծվել է 1926–ին՝ Լողի միջազգ. սիրող. ֆեդերացիայի կազմում: Օլիմպ. խաղերի ծրագրում է 1960–ից, աշխարհի առաջնությունների՝ 1973–ից, Եվրոպայի՝ 1926–ից:

ՋՐԱԳՐԱԿԱՆ ՅԱՆՑ, ցամաքի ջրավազանների և ջրահոսքերի (գետեր, լճեր, ճահիճներ և ջրամբարներ) ամբողջությունը: Միայն ջրահոսքերի համակարգը քննարկելիս կիրառվում է «գետային ցանց» տերմինը: Բնութագրվում է գետ. ցանցի խտության, լճաշատության և ճահճացման գործակիցներով: Ջ. ց–ի կառուցվածքը (խտ–յուն, լճաշատություն, ճահճացում) պայմանավորված է ֆիզիկաաշխարհագր. պայմաններով:

ՋՐԱԳՈՀՈՒԿԱՅԻՆ ՍՊՈՐՏ, հատուկ դահուկներով մարզիկի տեղաշարժը ջրի մակերևույթով՝ քաշող մոտորանավակի միջոցով: Առաջացել է 1930–ական թթ–ին ԱՄՆ–ում: Համաշխ. ջրադահուկ. միությանը (WWSU, հիմն.՝ 1947) անդամակցում է մոտ 80 երկիր (2010): Աշխարհի առաջնություններն անցկացվում են 1949–ից:

ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գիտ–յուն ստորերկրյա ջրերի մասին. ուսումնասիրում է նրանց կազմը, հատկությունները, ծագումը, տարածման օրինաչափությունները ու շարժումը, փոխազդեցությունը լեռն. ապարների հետ: Առաջացել է XIX դ–ի 2–րդ կեսին:

ՋՐԱԵՐԿՐԱՔԻՄԻԱ, *ջրաերկրաբանության* բաժին. ուսումնասիրում է ջրոլորտի քիմ. կազմը և նրանում տեղի ունեցող քիմ. շարժընթացները (ստորգետնյա ջրերի քիմ. կազմի ձևավորումն ու նրանց մեջ քիմ. տարրերի տեղաշարժի օրինաչափությունները):

ՋՐԱԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ, ջրէկ, ջրի հոսքի մեխ. էներգիան էլ. էներգիայի փոխակերպող *էլեկտրակայան*: Իրականացվում է էլ. գեներատորով շարժման մեջ դրվող *հիդրավլիկական տուրբինով*: Աշխարհի խոշորագույն ջրէկների հզորությունը հասնում է մինչև մի քանի ԳՎտ, օր.՝ «Սանսյա»–ն («Երեք կիրճ», ՉԺՀ)՝ 22,5, «Իտայպու»–ն (Բրազիլիա)՝ 14,0 ԳՎտ, ևն:

ՋՐԱԺԱՆՏԱԽՏ (Elodea), **հելոդեա,** ջրազարդազգիների ընտանիքի բազմամյա ջր. խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 10 տեսակ, աճում են կանգնած և դանդաղահոս ջրերում: Խոշոր կուտակումները խանգարում են նավագնացությանը և ձկնորսությանը: Կանաչ զանգվածն օգտագործվում է որպես կեր և պարարտանյութ՝ ձկնաբուծ. լճակներում:

ՋՐԱԻՆ-ՔՆԱԹԻՒ, ջրի մակերևույթից վերթիռ և նրա վրա վայրէջք կատարող ինքնաթիռ: Կախված թռիչքավայրէջք. սարքավորումներից՝ տարբերում են նավակ. (իրանն ունի նավակի տեսք), լողան. (անիվների փոխարեն տեղադրված են լողաններ), երկկենցաղ (նավակ. կամ լողան. Ջ–ներ, որոնք ունեն նաև անվավոր հենասարքեր՝ ցամաքից թռիչքի կամ վայրէջքի համար) և ստորջրյա թիերով կամ ջրադահուկներով Ջ–ներ:

ՋՐԱԼՎԵՐ, դաֆնիաներ (Daphnia), ճյուղարեղ խեցգետնակերպների ենթակարգի անողնաշարների սեռ: Երկ.՝ 1–3 *մմ*: Հայտնի է 26 տեսակ՝ կանգնած և դանդաղահոս քաղցրահամ ջրերում: Կեր է մանր ձկների և մատղաշների համար: Բազմացնում են ձկնաբուծ. գործարաններում:

ՋՐԱԽՈՋՈՒԿ (Hydrochoerus hydrochoeris), կրծողների կարգի ջրախոզուկների ընտանիքի կաթնասուն: Ընտանիքի միակ տեսակն է, ժամանակակից ամենամեծ կրծողը: Մարմնի երկ.՝ 1–1,5 *մ*, կ. զ.՝ 50–60 *կգ*: Տարածված է Կենտր. և Հվ. Ամերիկայի մերձարևադարձ. գոտու, գետերի ու լճերի ափերին: Լավ լողում է և սուզվում: Ընդակենդանի է, օգտագործում են միսը, մաշկը:

ՋՐԱԾԻԾԱՒՆԵՐ (Chlidoniidae), քարադրանմանների կարգի թռչունների ընտանիք: Հայտնի է 43 տեսակ, ՀՀ–ում՝ 7 (սպիտակապոչ, սպիտակաթև, սև, որորակտուց, գետային, փոքր Ջ. և կասպիական ծովածիծառ): *Որորների* ցեղակիցներն են, սակայն ավելի փոքր են: Կ. զ.՝ 50–70 *գ*: Մնվում են ջր. անողնաշարներով, ձկներով:

ՋՐԱԾԻՆ (Hydrogenium), H, տարրերի պարբեր. համակարգի VII խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 1, ա. զ.՝ 1,00794: Բնական Ջ. բաղկացած է 2 կայուն (պրոտիում և դեյտերիում) և աննշան քանակներով ճառագայթաակտիվ (տրիտիում) իզոտոպներից: Մոլ–ը երկատոմանի H_2 է: Ջ. անգույն, անհոտ գազ է, խտ.՝ 0,0899 $գ/սմ^3$, $t_{եռ.}$՝ – 252,76°C: Միանում է շատ տարրերի հետ, թթվածնի հետ առաջացնում է ջուր: Ջ. ամենատարածված տարրն է տիեզերքում, կազմում է աստղերի և արևի զանգվածի մոտ կեսը (պլազմայի ձևով), Արեգակի մթն–ի 84 %–ը, միջաստղ. միջավայրի և միգամածությունների հիմն. մասը: Երկրի վրա Ջ. մտնում է ջրի, կենդանի օրգանիզմների, քարածխի, նավթի բաղադրության մեջ: Օգտագործվում է ամոնիակի, սպիրտների, սինթետիկ բենզինների, քլորաջրածնի ստացման, պինդ և հեղուկ վառելանյութերի, ճարպերի հիդրման, մետաղների զոդման և կտրման, օդերևութաբան. զոնդերի և աերոստատների լցման համար: Մտնում է սինթեզ–գազի բաղադրության մեջ: Հեռանկարային է որպես վառելանյութ *ջրածնային էներգետիկայում*:

ՋՐԱԾՆԱԿԱՆ ԿԱՊ, քիմ. կապ, որն առաջանում է էլեկտրաբացաս. տարրի ատոմին (N, O, S ևն) կովալենտ կապով միացած ջրածնի ատոմի և ազատ էլեկտրոն. զույգ ունեցող ատոմի (սովորաբար՝ O, N) փոխազդեցությամբ: Ջ. կ. հանգեցնում է միանման և տարբեր մոլ–ների ասոցման, պայմանավորում է ջրի և սառույցի, մոլ. բյուրեղների, մի շարք սինթետիկ պոլիամիդների, սպիտակուց–ների, նուկլեինաթթուների կառուցվածքը և հատկությունները:

ՋՐԱԾՆԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՂ, որոշակի կոնցենտրացիայով թթվի լուծույթում ընկղմված և գազ. ջրածնի հոսքում գտնվող պլատինե թիթեղ: Եթե ջրածնի իոնների ակտիվությունը 1 *գ·իոն/լ* է, իսկ գազ. ջրածնի ճնշումը՝ 0,1 *ՄՊա*, Ջ. է–ի պոտենցիալը կոչվում է ստանդարտ պոտենցիալ, որի արժեքը պայմանականորեն ընդունված է 0: Այսպիսի Ջ. է. կոչվում է **ստանդարտ**, որի համեմատությամբ որոշում են մյուս էլեկտրոդների պոտենցիալները:

ՋՐԱԾՆԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱ, ներառում է H_2–ի ստացումը ջրից և այլ բնական հումքից, նրա պահպանումը և օգտագործումը՝ որպես *վառելանյութ*: Գլխ. առավելություններն են՝ այրման բարձր ջերմությունը (143,06 *ՄՋ/կգ*) ածխաջրածնային վառելանյութի (29,3 *ՄՋ/կգ*) համեմատ, հումքի անսահման պաշարները, էկոլոգ. անվտանգությունը (նրա այրման արգասիքը ջուրն է): Ջ. է. դեռևս չի

ստացել զանգված. կիրառություն: Հիմն. խնդիրներն են՝ H_2 ստանալու համար խնայող արտադրողականությամբ սարքի (օր.՝ էլեկտրոլիզարար, պլազմատրոն) ստեղծումը, գազ. և հեղուկ վիճակներում կամ սինթեզված միացությունների ձևով (օր.՝ միջմետաղ. միացություններ) նրա պահպանման եղանակները, ոչ մեծ կորուստներով տեղափոխումը ևն:

ՋՐԱԾՆԱՅԻՆ ՌՈՒՄԲ, մեծ ավերածության ուժի *միջուկային զենքի* հնացած անվանումը: Գործողությունը հիմնված է ջրածնի միջուկների սինթեզի արդյունքում առաջացող էներգիայի օգտագործման վրա: Առաջինը փորձարկվել է ԽՍՀՄ-ում 1953-ին՝ Ա. Դ. *Սախարովի* նախագծով:

ՋՐԱԾՆԱՅԻՆ ՅԻԿ, *պրոտոն-պրոտոնային շղթա*, առանց կատալիզորդի՝ ջրածնի՝ հելիումի փոխարկվելու ջերմամիջուկ. ռեակցիայի շղթան: Աստղերի մեծամասնության, նաև Արեգակի էներգիայի հիմն. աղբյուրն է:

ՋՐԱԾՆԱՅԻՆ ՑՈՒՑԻՉ, pH, լուծույթում ջրածնի իոնների քանակ. պարունակությունը ցույց տվող մեծություն, որը հավասար է ջրածնի իոնների կոնցենտրացիայի (*գ-իոն/լ*, ավելի ճիշտ՝ ակտիվության) տասնորդ. լոգարիթմին՝ բացաս.նշանով՝ $pH = -lgCH_+$: Ջ. ց. լուծույթի թթվությունը քանակապես բնորոշող մեծություն է, որի արժեքն ազդում է քիմ. ռեակցիաների և կենսաքիմ. շարժընթացների վրա:

ՋՐԱԾՆԻ ԳԵՐՕՔՍԻԴ, H_2O_2, անգույն մածուցիկ հեղուկ է, խտ.՝ 1,45 *գ/սմ³*, $t_{եռ.}$՝ 150,2°C: Հեշտությամբ քայքայվում է՝ առաջացնելով ջուր և թթվածին: Կիրառում են որպես օքսիդիչ, պոլիմերման հարուցիչ, մազերը, մորթին, մետաքսը սպիտակեցնող միջոց, բժշկության մեջ՝ որպես ախտահանող, հոտազերծող, արյունահոսությունը դադարեցնող միջոց: Ջ. գ-ի 30–%-անոց լուծույթը կոչվում է **պերհիդրոլ**:

ՋՐԱԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գիտ-յուն ջր. միջավայրի օրգանիզմների, միմյանց և կենսավայրի հետ փոխհարաբերությունների, օվկ-ների, ծովերի ու ներքին ջրերի արդյունավետության մասին: Հետազոտություններն սկսվել են XIX դ-ի 2-րդ կեսից, XIX դ-ի 3-րդ քառորդից բազմաթիվ երկրներում հիմնվել են ծով. և քաղցրահամ ջրերի հետազոտման կայաններ, այնուհետև՝ միջազգ. ջրակենսբ. կազմ-յուններ: Հայաստանում նման ուսումնասիրությունները կատարվել են XIX դ-ի վերջին քառորդից: Ներկայում Ջրակենսբ. հետազոտությունների կենտրոնը ՀՀ ԳԱԱ *Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտն* է:

ՋՐԱՀԱՎԱՍԱՐԱԳԾԵՐ, հիդրոիզոբաթներ, հավասարագծեր, որոնք միացնում են երկրի մակերևույթից ստորգետնյա ջրերի համահավասար խորության հայելու մակերեսի կետերը:

ՋՐԱՀԱՐՄ, տես *Հավերժահարսներ*:

ՋՐԱՀՈՎՎԻԿՆԵՐ (Rallidae), կոռնկանմանների կարգի թռչունների ընտանիք: Հայտնի է 138 տեսակ, ՀՀ-ում՝ 8 (ագահաճ, եվրոպ., մեծ ճահճահովվիկներ, եղեգնահավ, մարգահավ, ջրահովվիկ, սև փարփար, սուլթան. հավ): Մարմնի երկ.՝ 13–63 *սմ*: Ճահճ., հազվադեպ՝ ջր. թռչուններ են: Վատ են թռչում: Ակտիվ են մթնշաղին և գիշերը: 8 տեսակ և 8 ենթատեսակ գրանցված են ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՋՐԱՃՆՃՂՈՒԿՆԵՐ (Cinclidae), ճնճղուկանմանների կարգի թռչունների ընտանիք: Հայտնի է 4 (5) տեսակ, ՀՀ-ում՝ 1 (ջրաճնճղուկ): Նստակյաց է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 18, թևերի բացվածքը՝ 25,5–30 *սմ*, կ. գ.՝ 50–70 *գ*: Մարմինը գեր է, թևերն ու պոչը՝ կարճ: Ապրում է արագահոս լեռն. գետերում, հազվադեպ՝ ջրամբարներում: Մնվում է ջր. անողնաշարներով:

ՋՐԱՄԲԱՐՁ ԱՆԻՎ, ջրամբարձ մեքենայի 2–6 *մ* տրամագծով անիվ՝ ազատ կախված շերեփներով, որոնք անիվի պտույտի ընթացքում պարբերաբար լցվում ու դատարկվում են (շրջվելով) վաքի մեջ: Ոռոգման նպատակով օգտագործվել են դեռևս Հին Եգիպտոսում, Հնդկաստանում, Չինաստանում և այլուր:

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, օրենսդր. կազմակերպչ. և սանտեխ. միջոցառումների համակարգ, որի նպատակը խմելու ջրի աղբյուրների աղտոտման կանխումն է: Վերգետնյա ջրերի պահպանության ընդհ. պետ. միջոցառումները 1-ինը կիրառվել են Մեծ Բրիտանիայում 1870-ական թթ-ին, ստորգետնյա աղբյուրներինը՝ Ֆրանսիայում 1890-ական թթ-ին: Ջրի մասին 1-ին օրենքն ընդունվել է Գերմանիայում 1913-ին: Խմելու համար օգտագործում են հիմնականում փակ աղբյուրների ջրերը, որոնց ընտրությունը և ջրմուղի կառույցների շին-յան հսկողությունն իրականացնում է հիգիենիկ ու հակահամաճարակ. ծառայությունը: Գոյություն ունի Ջ. ս. պ-յան 2 գոտի՝ խիստ ռեժիմի և սահմանափակումների: 1961-ին սահմանվել է ջրում վնասակար նյութերի ՍԹՉ և մոտ 100 նյութերի ՄԹԿ-ները:

ՋՐԱՄԵՐԺ ԾԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ջրում չթրջվող ծածկույթներ, որոնցով պատում են մետաղների (խոնավ պայմաններում կոռոզիայից պաշտպանելու), գործվածքների, կաշվի, փայտի, բետոնի և այլ նյութերի մակերեսները՝ չթրջվելու և ջրակայունացնելու համար:

ՋՐԱՄԵՐԺՈՒԹՅՈՒՆ, նյութի՝ ջրով չթրջվելու հատկությունը: Ջրամերժ նյութեր են մի շարք մետաղներ, ճարպերը, մոմերը, սիլիցիումօրգ. հեղուկները: Ջ. հեղուկամերժության մասնավոր դեպք է:

ՋՐԱՄՈՒԿ (Arvicola terrestris), **ջրային դաշտամուկ**, համստերանմանների ընտանիքի դաշտամկների ենթաընտանիքի կրծող կաթնասուն կենդանի: Մարմնիերկ.՝ մինչև 25, պոչինը՝ 15 *սմ*: Ջրում լավ լողում է, սուզվում, կեր փնտրում, ցամաքում արագաշարժ է: ՀՀ-ում հանդիպում է բոլոր բնակլիմ. գոտիներում:

ՋՐԱՅԻՆ ԳՈԼՈՐՇԻ մթնոլորտի, ջրի գազանման վիճակը: Համ ու հոտ չունի: պարունակվում է մթն-ի ներքնոլորտում՝ առկրն 4 %: Մթն-ում առաջացնում է որոշակի ճնշում, պայմանավորում օդի խոնավապարունակությունը: Խտանում է մառախուղի, ամպերի տեսքով, երկրի մակերևույթ վերադառնում է տարատեսակ տեղումների տեսքով:

ՋՐԱՅԻՆ ԳՈԼՈՐՇԻ ԱՌԱՋԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, մթն. օդում պարունակվող *ջրային գոլորշու* մասնական ճնշումն է: Չափվում է *Պա* կամ *մմ սնդ. ս*-ով:

ՋՐԱՅԻՆ ԻԶՈՒԿ (Asellus aquaticus), հավասարաոտնների կարգի սարդակերպ: Երկ.՝ 12–20 *մմ*: Ապրում է քաղցրահամ ջրավազաններում: Երբեմն հանդիպում է մեծ քանակությամբ: Ձկների կեր է:

ՋՐԱՅԻՆ ԼՈՐՏՈՒ (Natrix tessellata), *շախմատանախշ լորտու*, լորտուների ընտանիքի իսկական լորտուների սեռի օձ: ՀՀ-ում հանդիպում է բոլոր մարզերում: Մարմնի երկ-յունը տարիքի հետ փոխվում է (14–140 *սմ*), պոչը 5–6 անգամ կարճ է: Մնվում է մանր ողնաշարավորներով: Օգտագործվում է ԳՀ նպատակներով: Կծում է հազվադեպ. կծածը մարդու համար վտանգավոր չէ:

ՋՐԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐ, ջր. պաշարների քանակ. ու որակ. ցուցանիշների, ջրհավաք ավազանների, ջրավազանների հոսներից ու ափերից արդյունահանվող նյութերի, կենսբ. պաշարների կազմի ու չափաքանակների, ջրօգտագործողների, ջրօգտագործման ու ջր. համակարգերի օգտագործման թույլտվությունների վերաբերյալ համապարփակ տվյալների գրանցման համակարգ: Ջ. կ. հաշվառում է ջր. պաշարների հաշվեկշիռը՝ ընդհ. և ըստ առանձին ջրավազանների: ՀՀ-ում պետ. Ջ. կ. վարում է ՀՀ բնապահպանության նախ-յունը:

ՋՐԱՅԻՆ ԿԱՐԻՃՆԵՐ (Nepa cinera), մլուկների ընտանիք: Երկ.՝ 15–50 *մմ*: Հայտնի է մոտ 200 տեսակ՝ տարածված լայնորեն, առավելապես՝ արևադարձ. մարզերում: Ապրում են կանգնած քաղցրահամ ջրամբարներում: Գիշատիչ են. հարձակվում են մատղաշ ձկների վրա, վնաս են հասցնում լճակ. ձկնաբուծությանը:

ՋՐԱՅԻՆ ԿՐԻԱՆԵՐ, *էմիդիդներ* (Emydidae), *կրիաների* կարգի ընտանիք: Հայտնի է կիսաջր. կենսակերպ վարող 11 սեռի շուրջ 41 տեսակ, ՀՀ-ում՝ 1 (*ճահճային կրիան*): Ընտանիքն ընդգրկում է բուսակեր, լեշակեր և գիշատիչ, ջր. ու ջրամերձ միջավայրում ապրող տեսակներ:

ՋՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ, երկրագնդի վրա և մթն-ում ջրի մուտքի ու ելքի քանակ. հարաբերակցությունը: Ջ. հ-ի բաղադրիչներն են մթն. տեղումները, գոլորշիացումը, գետ. հոսքը, ստորերկրյա ջրերի հոսքը, օրգանիզմների կլանած և բնակչության օգտագործած ջրերը: Երկրագնդի բազմամյա միջին տարեկան տեղումները 1020 *մմ* են, օվկ-ի մակերևույթից գոլորշիացումը՝ 880 *մմ*, ցամաքի մակերևույթից՝ 140 *մմ*: ՀՀ տարածքում տարեկան թափվում են 18,41 *կմ³* մթն. տեղումներ, որից 10,94 *կմ³*-ը (59,7 %) գոլորշիանում է, 6,86 *կմ³*-ը (37 %) ձևավորում է գետ., 0,61 *կմ³*-ը (3,3 %)՝ ստորերկրյա հոսքը: Ջ. հ. սերտորեն կապված է երկրի ջերմ. պայմանների հետ և բնական գոտիների բնութագրիչ կարևոր ցուցանիշներից է:

ՋՐԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ԳՀԻ Ի. Վ. Եղիազարովի անվան, ստեղծվել է 1963-ին՝ ՀԽՍՀ ԳԱ ջր. հիմնահարցերի (1943) և ՀԽՍՀ ջր. տնտ-յան նախ-յան հիդրոտեխնիկայի և մելիորացիայի ԳՀԻ-ների միավորմամբ: Հիմն. խնդիրներն են՝ ջրատնտ. համակարգերի, ջր. պաշարների հաշվառման ու պահպանման կառավարումը, հիդրոտեխ. կառուցվածքների նոր շինվածքների մշակումն ու հիդրավլիկ. մոդել. հետազոտությունների, հիդրոտեխ. կառուցվածքների անվտանգության ապահովումը, ջր. պաշարների մշտադիտարկումը ևն: Մշակել են Սևանա լճի մակարդակի պահպանման գիտ. հիմունքները:

ՋՐԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐ, ջրոլորտի՝ օգտագործման համար պիտանի ջրերը:

Կազմված են շարժուն (ջրի շրջապտույտի ընթացքում անընդհատ վերականգնվող) ու կայուն (օվկ–ներ, լճեր, սառցադաշտեր ևն) բաղադրիչներից: ՀՀ տարածքը սակավաջուր է (բնակչության 1 շնչին ընկնող Ջ. պ–ի տարեկան միջինը՝ 2,5 հզ. $մ^3$): Բնականոն վերականգնվող Ջ. պ–ի տարեկան միջինը 8,3 $կմ^3$ է: Նշանակալի են Ողոտան, Հրազդան, Քասաղ, Ախուրյան, Արփա գետերի, Սևանա լճի ավազանների անուշահամ և «Ջերմուկ», «Արզնի», «Բջնի», «Հանքավան» ու այլ հանք. ջրերի աղբյուրները:

ՋՐԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՄԾՏԱԴԻՏԱԿՈՒՄ, ջրագր., ջրաերկրբ., ջրաֆիզ. և ջրաքիմ. ցուցանիշների կանոնակարգված (և տարածման ենթակա) դիտարկումների համակարգ, որն ապահովում է այդ տվյալների հավաքումը և մշակումը: Ապահովում է տվյալներ ջր. պաշարների քանակ. (այդ թվում՝ ձնածածկույթների) և որակ. ցուցանիշների, օգտագործման արդյունավետության, ջր. պաշարների վրա մարդահարույց ազդեցությունների հետևանքների՝ ներառյալ աղտոտման, կեղտաջրերի և դրանցում գտնվող նյութերի կազմերի, քանակների, ջր. պաշարների վերականգնման, ջրհեղեղների, սելավների, երաշտների կանխատեսումների, ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների ու նրանց վիճակի, մթն. տեղումների և մթն–ի ջերմաստիճան. ռեժիմի, ջրօգտագործման թույլտվությունների, ջրի ազգ. ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ:

ՋՐԱՅԻՆ ՄՆԿԵՐ, էկոլոգ. խումբ. ներառում է տեսակներ մնկերի բոլոր դասերից: Աճում են ջրավազանների ջր. շերտերում, գետնահողում և ջրում խորասուզված հիմնանյութերի վրա:

ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, տնտ–յան ճյուղ. ապահովում էր ջր. պաշարների կառավարումը՝ ջրի նկատմամբ բնակչության և տնտ–յան կարիքները բավարարելու համար, ջրի ռացիոնալ օգտագործումն ու պահպանությունը աղտոտումից ու սպառումից, ջրատնտ. համակարգերի շահագործումը, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա ջրի վնասակար ազդեցության կանխարգելումը: ՀՀ Ջ. տ–յան կառավարման հարցերով զբաղվում է ՀՀ ջր. տնտ–յան պետկոմը:

ՋՐԱՅԻՆ ՈՒԼԻՆԵՐ, նավագնացության և փայտի լաստաոաքման համար օգտագործվող ջրատարածքներ: Տարբերում են արտաքին և ներքին Ջ. ու.: Արտաքին Ջ. ու. են օվկ–ները, արտաքին ծովերը, ծովածոցերը: Ներքին Ջ. ու. լինում են բնական (ներքին ծովեր, լճեր և գետեր) և արհեստ. (շլյուզավորված գետեր, նավարկելի ջրանցքներ, արհեստ. ծովեր, ջրամբարներ):

ՋՐԱՆԵՐԿ, **ջրանկար, աքվարել** (ֆրանս.՝ aquarelle, < acquarello, < լատ. aqua – ջուր), ջրում լուծվող ներկեր (սովորաբար՝ բուս. սոսնձանյութով) և նրանցով ստեղծվող նկարչությունը (ջրանկարչություն): Անթափանց Ջ–ով (գուաշով) նկարչությունը հայտնի էր դեռևս Հին աշխարհում: Մանրուր Ջ. լայնորեն կիրառվել է XV դ–ից: Ջ–ով աշխատել են Հ. Կոջոյանը, Ռ. Էլիբեկյանը և ուր.:

ՋՐԱՆՑՈՒԿ, ինքնահոս (առանց լրացուցիչ սարքավորանքի) ջրատար՝ բարձրությունների գտնվող բնական աղբյուրներից ջուրը տեղափոխելու համար: Ջ. են անվանում նաև ձորակների, գետերի, հեղեղատների, ճանապարհների վրա ջրատարի համար կառուցված կամուրջները:

ՋՐԱՆՑՔ, ջուրն ինքնահոսով տեղափոխելու համար կամ որպես ջր. փոխադր. ուղի ծառայող արհեստ. ջրատար: Կառուցում են բաց փորվածքում կամ լիրաթմրում: Ըստ նշանակության՝ Ջ–ները լինում են՝ նավարկելի (արհեստ. ջր. ուղիներ), էներգետիկ. (դերիվացիոն), ոռոգման, ջրավորման, չորացման, ջրմուղի, լաստառաքման, ձկնաբուծ. և համալիր նշանակության:

ՋՐԱՆՑՔԱՅԻՆ ԼՈՌՈ (Ictalurus punctatus), *կապտավարդների* ընտանիքի ձուկ: Հայաստան է ներմուծվել XX դ–ի վերջերին՝ որպես ձկնային տնտ–յուններում աճեցվող ապրանք. ձկնատեսակ: Հանդիպում է դանդաղահոս ջրանցքների մերձհատակ. մասերում: Խոշոր ձուկ է, մարմնի երկ.՝ 25–80 *սմ*, կ. զ.՝ 300 *գ*–5 *կգ*: Մնվում է անողնաշարավորներով և մանր ողնաշարավորներով: ՀՀ ձկնային տնտ–յուններում լայն տարածում չի ունեցել:

ՋՐԱՇԱՐԺԻՉ, **հիդրավլիկ շարժիչ**, հեղուկի հոսքի էներգիան աշխատող տարրի (լիսեռ, մխոցակոթ) մեխ. էներգիայի վերափոխող սարքավորում: Տարբերում են դինամիկ. (հիդրավլիկ. տուրբին, ջրանիվ) և ծավալ. (հիդրոգլան) Ջ–ներ: Շատ Ջ–ներ դարձելի են. կարող են աշխատել նաև որպես պոմպեր:

ՋՐԱՇՈՒՇԱՆ (Nymphaea), **ջրային վարդ, նիմֆեա**, հարսնամատազգիների (շուշանազգիներ) ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 40 տեսակ, ՀՀ–ում՝ 2 (սպիտակ կամ հարսնամատ և մաքրասպիտակ կամ ձյունասպիտակ Ջ–ներ)՝ Լոռու և Շիրակի մարզերի նախալեռն. գոտու ջրերում: Հայկ. բուսաշխարհի ամենազեղատեսիլ բույսերից է:

ՋՐԱՋԱՓԵՐ (Gerridae), փայտոջիլների մի քանի ընտանիքների անվանումը: Երկ.՝ 1–34 *մմ*: Հայտնի է մոտ 700 տեսակ: Ապրում են քաղցրահամ և ծով. ջրերի (երբեմն՝ բաց օվկ–ում) մակերեսին: Քայլում կամ արագ սահում է ջրի մակերևույթով (այստեղից՝ անվանումը): Գիշատիչ են, դիակեր:

ՋՐԱՊՂՊՂԵՂ (Poligonum hydropiper L.), մատիտեղազգիների ընտանիքի միամյա խոտաբույս: Ցողունի երկ.՝ մինչև 70 *սմ*: Ծաղկում է հունիսի վերջից մինչև աշուն: Պտուղը եռանիստ ընկուզիկ է: Պարունակում է գլյուկոզիդ, որը խթանում է արյան մակարդումը, ունի մանրէազերծ հատկություն:

ՋՐԱՋԵՐՄԱՅԻՆ ՄԻՆԵՐԱԼ, անօրգ. նյութերի բյուրեղների (օր.՝ SiO_2, ֆոսֆատներ) ստացումը երկրի ընդերքում միներալների գոյացման շարժընթացները մոդելավորող պայմաններում: Հիմնված է ջրի և ջր. լուծույթների՝ բարձր ջերմաստիճանի (մինչև 500°C) և ճնշման (սովորաբար՝ 10–80 *ՄՊա*) տակ սովոր. պայմաններում անլուծելի նյութերը (որոշ օքսիդներ, սիլիկատներ, սուլֆիդներ ևն) լուծելու հատկության վրա: Նման դեպքերում աճեցնում են նաև խոշորաչափ միաբյուրեղներ (օր.՝ մինչև 50 *կգ* զանգվածով կվարցի բյուրեղներ):

ՋՐԱՋՐԱՅԻՆ ՌԵԱԿՏՈՐ, *միջուկային ռեակտոր*, որտեղ նեյտրոնների դանդաղեցուցիչը սովոր. ջուրն է, որը միաժամանակ ծառայում է նաև որպես ջերմակիր:

ՋՐԱՌԱՏԻ ՍՈՒՐԲ ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑԻ, VI դ–ի ճարտ. հուշարձան ՀՀ Շիրակի մարզի Ջրառատ գ–ում: Պահպանվել են մեծադիր սրբատաշ գորշ տուֆով կառուցված եկեղեցու հս. պատերը՝ մոտ 3,5 *մ* բարձր–յամբ (XIX դ–ում այն լրացվել է ուղղանկյուն պատերով, արլ. մասը՝ Ավագ խորանով և ավանդատներով): Եկեղեցու ճարտ. լուծումը բացառիկ է հայկ. եկեղեց. կառույցներում:

ՋՐԱՌՎԱՀԱՏ (Menyanthes), **ջրաերեքնուկ**, ջրառվույտազգիների ընտանիքի ճահճ. բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 1 տեսակ՝ եռատերև Ջ., ՀՀ–ում՝ Վայոց ձորի մարզում: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում: Կոճղարմատը սողացող է, բազմամյա, հատվածավոր: Ցողունի բարձր.՝ մինչև 40 *սմ*:

ՋՐԱՄԱՄՈՒՏ (Lutra lutra), կզաքիսազգիների ընտանիքի գիշատիչ կաթնասուն: ՀՀ–ում հանդիպում է լայնահուն գետերում ու լճակներում: Մարմնի երկ.՝ 70–75, պոչինը՝ 50 *սմ*, կ. զ.՝ 5–6 (երբեմն՝ 10) *կգ*: Լավ լողում է և սուզվում, ցամաքում քայլում է դանդաղ: Մնվում է ձկներով, բույսերով: Վարում է գիշեր. կենսաձև: Հեշտությամբ ընտելանում է: Մորթին արժեքավոր է: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՋՐԱՍԱՐԴ, քաղցրահամ ջրերի միակ սարդը: Արուի երկ.՝ 15–20, էգինը՝ 10–12 *մմ*: Ընչում է զույգ թոքերի ու տրաքեաների միջոցով: Լայնորեն տարածված է Եվրոպայում: Կառուցում է ստորջրյա բույն, որը լցնում է փորիկի մազիկների վրայի օդով:

ՋՐԱՍԵՐՆԵՐ (Hydrophilidae), կարծրաթև միջատների ընտանիք: Հայտնի է մոտ 2 հզ. տեսակ, ՀՀ–ում՝ 70՝ տարածված ամենուրեք: Մանր ու միջին մեծության միջատներ են (երկ.՝ 1–5 *մմ*): Ավելի հաճախ հանդիպում են դեղնաթև, քառակետ, գորշատ, փայլուն, ճահճ. և այլ տեսակներ: Հիմնականում բուսակեր են, թրթուրները՝ բազմակեր: Ճահճ. ջրասերը լուրջ վնաս է հասցնում հացահատիկ. մշակաբույսերին:

ՋՐԱՐԳԵԼԱԿ, **շլյուզ** (նիդերլ.՝ sluis), ամբարտակի (պատվարի) մեջ թողնված փականավոր անցք՝ անհրաժեշտության դեպքում փակում–բացում են՝ ջրի ելքը կարգավորելու համար:

ՋՐԱՐԾԻՎ, (Pandion haliaetus), բազեանմանների կարգի ջրարծիվների ընտանիքի թռչուն: Ընտանիքի միակ տեսակն է: Բնադրող չվող է, հազվագյուտ: Մարմնի երկ.՝ 55–58, թևերի բացվածքը՝ 145–170 *սմ*, կ. զ.՝ 1,3–1,9 *կգ*: Խոշոր, գիշատիչ թռչուն է: Ապրում է ափամերձ անտառներով սահանքավոր գետերում, լճերում, լճակներում (ՀՀ–ում՝ Սևանա լճում, Արարատյան դաշտի ձկնաբուծ. տնտ–յուններում, Ապարանի, Ախուրյանի ջրամբարներում), սնվում է ձկներով, հազվադեպ՝ գորտերով: Թվաքանակը նվազել է: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՋՐԱՐՋԵՐ, **ենոտներ**, *ջրարջերի* գիշատիչ կաթնասունների սեռ: Հայտնի է 2 տեսակ՝ լվացարար և խեցգետնակեր Ջ.: Ապրում են Ամերիկայի անտառներում: Մորթին խիտ է, երկար: Լվացարար Ջ. կլիմայավարժեցրել են տարբեր երկրներում:

ՋՐԱՅՈՒԼԵՐ, *փառեղների* ընտանիքի թռչունների 2 սեռերի ընդհ. անվանումը: Լինում են մեծ (4 տեսակ, երկ.՝ մինչև 80 *սմ*) և փոքր (7 տեսակ, երկ.՝ մինչև 35 *սմ*) Ջ–եր: Ոտքերն ու պարանոցն ավելի կարճ են, քան տառեղների մեծամասնությանը:

ՋՐԱՓԱԿԱՆ, **հիդրավլիկ փական**, հիդրավլիկ սարքավորում, որն արգելակում է գազի հետադարձ հոսքը խողովակաշարերում: Սանտեխնիկայում օգտագործվում է կոյուղային գազերի ելքը (սանհանգույցների սարքերով) շինություններ կանխարգելելու համար:

ՋՐԱՔԻՄՆԵՐ, **ազնվաքիսներ**, կզաքիսազգիների ընտանիքի գիշատիչ կաթնասունների 2 տեսակի ընդհ. անվանումը: Եվրոպ. Ջ–ի մարմնի երկ.՝ մինչև 45, պոչինը՝ մինչև 20 *սմ*: Տարածված է Եվրոպայում և Սիբիրի հվ–արմ–ում: Ամերիկ. Ջ. ավելի խոշոր է, ապրում է Հս. Ամերիկայում: Ջ. ավելի հաճախ հանդիպում են անտառ. գետերի, լճերի, ճահիճների մոտակայքում, լավ լողում են և սուզվում: Մորթադրյունագործության արժեքավոր կենդանի է: Ամերիկ. Ջ. բնակեցվել է Եվրոպայի և Հս. Ասիայի մի շարք վայրերում:

ՋՐԲԱԺԱՆ, հարևան գետ. ավազանները միմյանցից բաժանող գիծ, որն անցնում է ռելիեֆի ամենաբարձր նիշերով: Լեռն. շրջաններում Ջ. լավ է արտահայտված և անցնում է լ–շղթաների կատարներով, հարթավայրերում դժվար նշմարելի է: Տարբերում են մակերևութ. և ստորերկրյա Ջ–ներ:

ՋՐԲԱՇՅԱՆ Արմեն Միսիթարի (ծ. 1954), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (2001): Միսիթար *Ջրբաշյանի* որդին: Աշխ–ները վերաբերում են կոմպլեքս անալիզի, գծային օպերատորների սպեկտր. տեսությանը:

ՋՐԲԱՇՅԱՆ Էդվարդ Մկրտչի (1923–1999), գրականագետ, խմբ.: Բանասիր. գիտ. դ–ր (1965), պրոֆ. (1967): ՀՀ ԳԱԱ ակադ. (1982, թղթ. անդամ՝ 1974–ից): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1970): Մխիթար *Ջրբաշյանի* եղբայրը: 1961–62–ին՝ ***«Սովետական գրականություն»*** ամսագրի, 1967–77–ին՝ ***«Բանբեր Երևանի համալսարանի»*** հանդեսի գլխ. խմբ.: Հեղինակ է «Թումանյանի պոեմները» (1964), «Ռուբեն Սևակ» (1965), «Թումանյանի բալլադները» (1969), «Պոետիկայի հարցեր» (1976), «Գրականության տեսություն» (5–րդ վերամշկ. և լրց. հրտ.՝ 1980), «Միքայել Նալբանդյանը և արդիականությունը» (1984), «Գրականագիտություն: Տեսական դասընթաց» (1993), «Վահան Տերյանի տաղաչափական համակարգը» (1995), «Թումանյանի գրական ժառանգությունը» (2000), «Փաստերի հետքերով. Գրականագետի նոթեր» (2001) և այլ աշխ–ների:

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի, Կարմիր աստղի, ՀՄՊ 1–ին աստիճանի շքանշաններ, ՀԽՍՀ ԳԱ վաստակավոր (1981):

ՋՐԲԱՇՅԱՆ Մխիթար Մկրտչի (1918–1994), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1949), պրոֆ. (1950): ՀՀ ԳԱԱ ակադ. (1956, թղթ. անդամ՝ 1953–ից, ֆիզմաթ. գիտ–յունների բաժանմունքի ակադ. քարտուղար՝ 1964–78–ին): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (1964): Էդվարդ *Ջրբաշյանի* եղբայրը, Արմեն *Ջրբաշյանի* հայրը: ՀՀ ԳԱԱ «Մաթեմատիկա» ամսագրի գլխ. խմբ. (1966–ից), Մաթ–ի ինստ–ի հիմնադիր–տնօրեն (1971–89): Աշխ–ները վերաբերում են ֆունկցիաների և մոտավորությունների տեսություններին և հարմոնիկ անալիզին կոմպլեքս. տիրույթում: Կառուցել է Ֆուրյե–Պլանշերելի տիպի ձևափոխությունների կատարյալ տեսություն՝ Ֆուրյե–Ջրբաշյանի ձևափոխություններ: Մեծապես նպաստել է հայկ. մաթ. գիտ. դպրոցի հիմնադրմանն ու զարգացմանը: ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (1971), Հոկտ. հեղ–յան (1978) շքանշաններ, ՀԽՍՀ ԳԱ մեծարման գիր (1987):

ՋՐԲԱՇՅԱՆ Ռաֆայել Քրիստափորի (ծ. 1923), ռեժ.: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1985): ՀՀ ժող. արտիստ (2008): Պրոֆ. (1986): 1955–69–ին՝ ԵՕԲԹ ռեժ., 1971–77–ին (ընդհատումով)՝ Կիրովականի, Արտաշատի թատրոնների գեղ. ղեկ.: Բեմադրել է Ա. Հարությունյանի «Սայաթ–Նովա» օպերան (ԵՕԲԹ), Լ. Ֆրանկի «Կաղը և Աննան» (հեռուստաներկայացում), Վ. Շեքսպիրի «Մակբեթ», Ա. Ն. Օստրովսկու «Անտառ», Հ. Մաթևոսյանի «Աչնան արև» և այլ պիեսներ:

ՋՐԲԱՇՅԱՆ Ռուբեն Տիգրանի (ծ. 1934), երկրաբան: Երկրբ–հնքբ. գիտ. դ–ր (1990), պրոֆ. (1994): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2012): Տիգրան *Ջրբաշյանի* որդին: Աշխ–ները վերաբերում են հրաբխականության զարգացման և տեղաբաշխման օրինաչափություններին, հրաբխ. շարքերի ու կազմավորումների դասակարգմանը, տարբեր երկրադինամիկ. պայմաններում հրաբխայնության և տեկտոնիկայի փոխկապակցվածության բացահայտմանը, երկրբ. վտանգավոր երևույթներից ազդեցության նվազեցման գիտ. խնդիրներին:

ՀՀ «Անանիա Շիրակացի» (2003), ՌԳԱ Պ. Լ. Կապիցայի (1998), և Ա. Էյնշտեյնի (2002) անվ. մեդալներ:

ՋՐԲԱՇՅԱՆ Ստեփան Խաչատուրի (1917–1973), կոմպոզիտոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1963): 1956–62–ին՝ Հայաստանի ռադիոյի ժող. գործիքների անսամբլի երաժշտ. ղեկ., 1962–ից՝ գլխ. դիրիժոր, 1961–71–ին՝ գեղ. ղեկ.: Հեղինակ է «Գիքոր» օպերայի (1973), «Երազիկ» (1960), «Չառլեի մորաքույրը» (1961), «Մարսեցի փեսացուն» (1966) օպերետների, նաև երգերի:

ՋՐԲԱՇՅԱՆ Վաղարշակ Հակոբի (1921–2000), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1974): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1982–ից): Ցույց է տվել որ μ–մեզոնների բևեռացման փոքր աստիճանը պայմանավորված է մեզոատոմ. անցումների ժամանակ սպին–ուղեծր. կապով: Ապացուցել է, որ ազատ մասնիկը, իմպուլսից բացի, ունի նաև լրիվ մոմենտ: Ստեղծել է պոզիտրոնի ռելյատիվիստ. տեսություն, որտեղ բացակայում են անվերջ մեծ թվով չդիտվող օբյեկտները:

ՋՐԲԱՇՅԱՆ Տիգրան Արշակի (1889–1937), երկրաբան: Պրոֆ. (1935): Ռուբեն *Ջրբաշյանի* հայրը: 1929–ից՝ ԵՊՀ աշխարհաերկրբ. ֆակ–ի առաջին դեկանը, 1935–ից՝ նորաստեղծ Աշխարհաերկրբ. ԳՀԻ տնօրենը: Հիմնավորել է Արարատյան դաշտի նստվածքների աղաբերության և նավթագազաբերության հեռանկարները: Ուսումնասիրել է Հրազդանի ավազանի հանք. ջրերը, լավաները, սողանքները, սելավները: 1937–ին անհիմն բռնադատվել է, գնդակահարվել, հետմահու՝ արդարացվել:

ՋՐԳՈՂՈՒԹՅՈՒՆ, **ասցիտ** (հուն.՝ askites – բառացի՝ փքված մորթու նման, այտուցված), հեղուկների կուտակումը մարմնի որովայնի խոռոչում (որովայնի Ջ.)՝ սրտային անբավարարության, լյարդի ցիռոզի, որովայնամզաբորբի (պերիտոնիտ) դեպքերում:

ՋՐԸՆԿԱԼ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ (Aquilegia Olimpica), հրանունկազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույս: Հանդիպում է ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում, հիմնականում՝ մերձալպ. գոտիներում: Արմատ. համակարգը հողում խորանում է մինչև 60 *սմ*, բարձր.՝ 35–40 *սմ*: Մեկ բույսի վրա բացվում է մինչև 25–30 ծաղիկ: Դեղաբույս է, ժող. բժշկության մեջ օգտագործվում է որպես հակալնդախտ. ցավազրկիչ:

ՋՐԸՆԿՈՒՀՅԶ (Trapa), **ջրաշագանակ**, ջրընկուզազգիների ընտանիքի ջր. միամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է ավելի քան 35 տեսակ, ՀՀ բնական ջրավազաններում բացակայում է: Հիշատակվում է Ջ–ի բրածո ձևերի գոյությունը Մեղրիի և Վայքի տարածաշրջաններում (Արմեն *Թախտաջյան*):

ՋՐԻ ԾԱԽՍ, միավոր ժամանակում՝ հոսքին ուղղահայաց հատույթով հոսող ջրի ծավալը (սովորաբար՝ *մ³/վ*, փոքր հոսքերի դեպքում՝ *լ/վ*):

ՋՐԻ ԿՈՇՏՈՒԹՅՈՒՆ, ջրում կալցիումի և մագնեզիումի աղերի առկայությամբ պայմանավորված հատկությունների ամբողջություն: Տարբերում են ***ժամանակավոր*** (երբ ջրում առկա են հիդրոկարբոնատներ) և ***մշտական*** (քլորիդներ, սուլֆատներ ևն) կոշտություններ: 1–ինը վերացնում են ջուրը եռացնելով, իսկ 2–րդը՝ քիմ. եղանակով (ավելացնում են հանգած կիր, սոդա, իոնափոխանակիչներ): Կոշտ ջրի օգտագործումը հանգեցնում է պինդ նստվածքի (դիրտ) առաջացման ջերմափոխանակիչներում, կաթսաներում, դժվարացնում է սննդամթերքի եփվելը և լվացքը:

ՋՐԻ ՇՐՋԱՊՏՈՒՅՏ, ջրի անընդհատ տեղաշարժ Երկրի մթն–ում, ջրոլորտում և երկրակեղևում: Ուղեկցվում է ջրի ագրեգատ. վիճակների փոփոխություններով: Առանձնացվում է ջրի 2 շրջապտույտ՝ տեղական (փոքր) և համաշխ. (մեծ):

ՋՐԻՄՈՒՌՆԵՐ (Algae), ստորակարգ, ինքնաասուն, քլորոֆիլ պարունակող բույսերի էկոլոգ. խումբ, որոնց գերակշռող մասն աճում է ջր. միջավայրում, որտեղ կազմում են բուս. զանգվածի հիմն. մասը: Ջ. հարմարված են նաև ցամաք. կյանքին, հանդիպում են հողում, ծառերի կեղևի վրա: Ջ–ի մարմինը՝ թալոմը, չունի իսկական արմատներ, ցողուն և տերևներ, չափերը՝ միկրոնի մասերից մինչև 50 *մ*: Անբջիջ, միաբջիջ, բազմաբջիջ գաղութ. օրգանիզմներ են: Բազմացումն անսեռ, վեգետատիվ և սեռ. ճանապարհով է: Բաժանվում է կանաչ, գորշ, կարմիր, ոսկեգույն, դեղնականաչավուն, դիատոմային և այլ տեսակների: Հայտնի է 50 հզ. տեսակ: Քաղցրահամ ջրերում և ծովերում օրգ. նյութի հիմն. արտադրողն են (պրոդուցիենտներ): Մտնում են պլանկտոնի և բենթոսի կազմության մեջ: Որոշ տեսակներ (օր.՝ լամինարիան, պորֆիրան ևն) ուտելի են, մյուսները՝ ագարի, յոդի և նրի ստացման հումք: Մի շարք Ջ. փորձարկվում են որպես տիեզերակայաններում կենսապահովման համակարգի բաղադրիչ: Որոշ միաբջիջներ սնկերի հետ համակեցությամբ առաջացնում են քարաքոսեր:

ՋՐԾԱՂԻԿ, սուրվիրուս. հիվանդություն (առավելապես՝ երեխաների). ուղեկցվում է տենդով, մաշկի ու լորձաթաղանթների բնորոշ բծաբշտացաններով, որոնք չորանում են և վերածվում կեղևիկների: Վարակը տարածվում է օդակաթիլ. ճանապարհով:

ՋՐԿԱՆԵՓ (Datisca), ջրականեփազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 2 տեսակ, ՀՀ-ում՝ 1 (Datisca cannabina)՝ Կոտայքի և Սյունիքի մարզերում, Երևանի շրջակայքում: Աճում է նախալեռնայինից մինչև միջինլեռն. գոտու խոնավ, ստվերոտ վայրերում:

ՋՐԿՈՏԵՄ (Nasturtium), **հորփ կոտեմ**, *կաղամբազգիների* (խաչածաղկավորներ) ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 6 (այլ տվյալներով՝ 2) տեսակ, ՀՀ-ում՝ 1 (դեղատու Ջ.)՝ Լոռու, Տավուշի, Կոտայքի, Սյունիքի մարզերում, Երևանի շրջակայքում՝ ճահիճներում, գետերի, առուների ափերին: Դեղաբույս է, պարունակում է եթերայուղեր, գլիկոզիդ, յոդ, C վիտամին, կարոտին (A-նախավիտամին):

ՋՐՀԱՎԱՔ ԱՎԱՋԱՆ, երկրի մակերևույթի ջրբաժանով առանձնացած տեղամաս, որի ջրերը հոսում են տվյալ գետը, գետ. համակարգը կամ այլ ջրավազան:

ՋՐՀԵՂԵՂ, ըստ աստվածաշնչյան առասպելի՝ աշխարհի հեղեղում և մարդկության (բացառությամբ մի քանի ընտրյալների), ինչպես նաև կենդանի բոլոր արարածների կործանում: Ըստ ավանդության՝ արարիչը ջրահեղձմամբ պատժել է մարդկանց՝ ի վերուստ սահմանված արգելքների խախտման, նրանց անողոք, վատաբարո վարքի և այլ մեղքերի համար: Աստծու կամքին իրազեկ ***Նոյը*** նախօրոք կառուցել է վիթխարի տապան (նավ), այնտեղ տեղավորել ընտանիքը (8 անձ), կենդանիներ (մեկական զույգ), բույսերի սերմեր: 40 օր ու գիշեր տեղացող հորդ անձրևը երկիրը ծածկել է ջրով: 150 օր նավարկելուց հետո Նոյը, ի վերջո, հանգրվանել է Արարատ լ-ան գագաթին: Ջ-ից 365 օր անց գետինը չորացել է, լեռան կատարից փրկվածներն իջել են այն պայմանով, որ «մարդն այլևս չի թափելու իր նմանի արյունը» և աշխարհում ստեղծելու է արդար կյանք:

ՋՐՀՈՍ (լատ.՝ Aquarius), կենդանաշրջանի համաստեղություն երկնքի Հվ. կիսագնդում՝ Ձկներ, Կետ, Արծիվ և Այծեղջյուր համաստեղությունների միջև: Արեգակը Ջ-ում գտնվում է փետր. 15-ից մինչև մարտի 8-ը:

ՋՐՈԼՈՐՏ, **հիդրոսֆերա**, երկրագունդը շրջապատող ընդհատուն ջր. թաղանթը՝ մթն-ի և Երկրի կարծր կեղևի (լիթոսֆերա) միջև: Ներառում է օվկ-ները (1,37 մլրդ $կմ^3$), ստորգետնյա ջրերը (61,4 մլն $կմ^3$), սառցադաշտերը և ձյան (24 մլն $կմ^3$), մակերևութ. քաղցրահամ (0,5 մլն $կմ^3$), մթն. (0,015 մլն $կմ^3$) և կենդանի օրգանիզմներում եղած (0,00005 մլն $կմ^3$) ջրերը: Ջ. ծածկում է Երկրի մակերևույթի 70,8 %-ը: Մարդու համար կարևոր նշանակություն ունեն քաղցրահամ ջրերը (Ջ-ի 4,5 %-ը), որոնց մի մասը (մոտ 50 %) կուտակված է մերձբևեռ. սառցադաշտերում:

ՋՐՈՍՊ (Lémna), **ձկնոսպ, գորտնբույս**, ջրոսպազգիների ընտանիքի բազմամյա ջր. խոտաբույս: Հայտնի է 10 տեսակ, ՀՀ-ում՝ 5 (փոքր, եռմասնյա, ուռուցիկ բազմարմատ ևն): Մանր, ջրի մեջ սուզված կամ մակերեսին լողացող կլորավուն կամ երկարավուն կանաչ թիթեղիկներ են: ՀՀ-ում տարածված է գրեթե բոլոր մարզերում՝ մինչև 2000 *մ* բարձրներում գտնվող քաղցրահամ ջրերում:

ՋՐՊԵՏՅԱՆ Հակոբ Շահան Սարգսի, **Ջրպետ** (1772–1837), քերական: Ֆրանս. ու հայ. տեքստերով, ծնթգր-ներով և առաջաբանով լույս է ընծայել Մատթեոս Ուռհայեցու «Պատմութիւն»-ից 2 հատված (1812), «Քերականութիւն Դիոնէսիոսի Թրակացւոյ...» (1824) աշխ-ը: Հեղինակ է «Քերականութիւն արամեան լեզուի» (1823) դասագրքի: Թարգմանել (հայ., պարսկ. և ֆրանս.) ու հրատարակել է «Տեղեկութիւնք ի վերայ այժմեան կացութեան թագաւորութեանն Պարսից» (Դ. Մելիք-Շահնազարյանի և Լ. Լանգլեսի հետ, 1817) աշխ-ը:

ՋՐՎԵԺ, գետ ՀՀ Կոտայքի մարզում և Երևանում: Սկիզբ է առնում Գեղամա լ-վահանի հվ-արմ. լ-ճայուղից և Երևանի տարածքում ձախից միախառնվում Գետառին: Երկ.՝ 24 *կմ*, ավազանը՝ 88 $կմ^2$: Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով:

ՋՐՎՇՏԻԿ ՎԱՆՔ, **Ներսմիհրի ուխտ, Սուրբ Եղիշե առաքյալ վանք**, ճարտ. համալիր Լ/Հ Մարտակերտի շրջանի Մատաղիս գ-ից հս-արմ.՝ Սեավի լ-բազուկներից մեկի լանջին: Վաչագան Բարեպաշտ թագավորը Սբ Եղիշեի նահատակության տեղում հուշասյուն է կանգնեցրել (V դ., գերեզմանի վրա կառուցել է մատուռ-դամբարան): Հետագայում կառուցվել են վանքի Սբ Եղիշե առաքյալ (1244), գլխ.՝ միանավ թաղածածկ (XII–XIII դդ.) եկեղեցիները, երկսյուն գավիթը (1264), քառասյուն զանգաշտարակը (1323): Կանգուն են 7 եկեղեցու մատուռները (XIII–XVII դդ.): Համալիրի հվ-ում խցերն են, սեղանատունը, վանահոր երկհարկ շենքը (1552):

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, աղբյուրներից խմելու, կենցաղ., բուժ., արդ., էներգետիկ., գղտ., տրանսպորտ., ձկնատնտ., ոռկրեաացիայի և այլ կարիքների համար ջր. պաշարների օգտագործումը: ՀՀ-ում Ջ-ման բաշխվածությունը, ըստ մարզերի, խիստ անհամաչափ է. Արմավիրում՝ մոտ 600 մլն $մ^3$, Լոռիում, Տավուշում, Գեղարքունիքում, Վայոց ձորում՝ 5–15 մլն $մ^3$, կարգավորվում է ՀՀ ջր. օրենսգրքով (2002):

ՋՐՕՐՀՆԵՔ, կրոն. տոնահանդես՝ նվիրված Քրիստոսի մկրտության (անվանակոչության) հիշատակին: ՀԱԵ նշում է ***Սուրբ Ծննդյան*** և ***Ապրածահայտնության պոնի*** առավոտյան, պատարագից հետո:

ՋՈՒԲԱ, Հվ. Սուդանի մայրաքաղաքը, Կենտր. Էկվատորիա նահանգ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 492,9 հզ.(2014):

ՋՈՒԲՐԱՆ Խալիլ Ջուբրան (1883–1931), արաբ գրող, նկարիչ (Լիբանան): 1910-ից՝ տարագիր (ԱՄՆ): Գրել է նաև անգլ.: Հեղինակ է «Կոտրված թևեր» (1912) վիպակի, «Արցունք և ժպիտ» (1914) քնար. գործերի, «Փոթորիկներ» (1920) պատմվածքների ժող-ների և այլ երկերի: Նամակներում դատապարտել է Հայոց ցեղասպանությունը: Նպաստել է արաբ. գեղանկարչության զարգացմանը: Երևանում տեղադրվել է Ջ-ի կիսանդրին (2005, քանդ.՝ Լևոն Թոքմաջյան): Հայ. հրատարակվել են Ջ-ի «Մարգարե», «Խենթը» (երկուսն էլ՝ 2016) փիլ. էսսե-ների ժող-ները:

ՋՈՒԳԱՐԱ, *դաշտավարությունգործիների* ընտանիքի սորգո ցեղի խոտաբույս: Ցողունի բարձր.՝ 2–3 *մ*, բերքատվությունը՝ 2–3 *գ/հա*:

ՋՈՒԹԱԿ, քառալար աղեղնավոր երաժշտ. գործիք՝ ***ռեգիստրով*** ամենաբարձրը ջութակների ընտանիքում: Լարվածքը՝ ***կվինտային***: Նվագում են աղեղով կամ պիցցիկատոյով: Ջ-ի դաս. տիպն ստեղծվել է XVI–XVIII դդ-ում Հս. Իտալիայում՝ Բրեշիայի (Գ. դա Սալո, Ջ. Մաջինի) և Կրեմոնի (Ա. և Ն. Ամատիներ, Ջ. Գվառների, Ա. Ստրադիվարիուս) դպրոցներում: XVIII–XX դդ-ում՝ գլխ. մենակատար գործիքներից:

ՋՈՒԻՍՈՆ (Jewison) Նորման (ծ. 1926), ամերիկացի ռեժ.: 1962-ից՝ Հոլիվուդում: Նկարահանել է «Քառասուն ֆունտ անախորժություն» (1962), «Ջութակահարը տանիքին» (1970), «Գերաստղ Հիսուս Քրիստոս» (1972), «Աստծու գառը» (1985), «Դատավճիռ» (2003) և այլ ֆիլմեր:

ՋՈՒԼԻԱՆԻ (Ciuliani) Մաուրո (Ջուզեպպե Սերջո Պանտալեո, 1781–1829), իտալացի կիթառահար, կոմպոզիտոր: Լ. վան Բեթհովենը նրա համար գրել է կիթառի պիեսներ: Հեղինակ է կիթառի համար երկերի (կոնցերտներ, էտյուդներ, վարիացիաներ ևն), կամեր-գործիք. անսամբլների (կիթառի մասնակցությամբ), ռոմանսների և այլ գործերի:

ՋՈՒԼԻԱՐԴԻ ԴՊՐՈՑ (Juilliard School), բարձրագույն երաժշտաթատեր. կրթ. հաստատություն ԱՄՆ-ում: Հիմնադրվել է 1905-ին Նյու Յորքում (հիմնադիր՝ Ֆ. Հ. *Դամրոշ*)՝ որպես երաժշտարվ-ի ինստ.: Օ. Ջուլիարդի հիմնադրամի (1924) ստեղծումից հետո՝ Ջուլիարդի երաժշտության դպրոց: Դպրոցում թատեր. և խորեոգրաֆիկ ֆակ-ների հիմնադրմամբ է պայմանավորված «Ջ. դ.» անվանումը (1969-ից):

ՋՈՒԼԻՆԻ (Giulini) Կառլո Մարիա (1914–2005), իտալացի դիրիժոր: 1953–84-ին՝ Միլանի «Լա Սկալա» թատրոնի, Վիեննայի, Լոս Անջելեսի ֆիլհարմոնիկ նվագախմբերի գլխ. դիրիժոր: Երկացանկում՝ հիմնականում XIX դ-ի իտալացի կոմպոզիտորների օպերաներ:

ՋՈՒԼՀԱԿՅԱՆ Ռոմեո Սուրենի (1937–2005), ճարտ.: ՀՀ վաստ. ճարտ. (1987): ՀՃԱ թղթ. անդամ (1994): Նրա նախագծերով և համահեղինակությամբ Երևանում կառուցվել են ՀԽՍՀ ՆԽ ընդունելությունների տունը (1980), Դավթաշենի կամուրջը (1982–92), մետրոպոլիտենի «Շենգավիթ» (1987), «Զորավար Անդրանիկ» (1989) կայարանները, Սբ Սարգիս եկեղեցու զանգակատունը (1997): Հեղինակ է մի շարք հուշարձանների, մահարձանների ճարտ. մասերի, հուշասյուների և այլ գործերի:

ՋՈՒԼՖԱԼԱԿՅԱՆ Արսեն Լևոնի (ծ. 1987), հունա-հռոմ. ոճի ըմբիշ: Լևոն *Ջուլֆալակյանի* որդին: Միջազգ. կարգի ս. վ.: Ըմբշամարտի աշխարհի (2014), օլիմպ. խաղերի արծաթե (2012), բրոնզե (2002) մեդալակիր, Եվրոպայի չեմպիոն (2009) և բրոնզե (2012), աշխարհի արծաթե (2010) և բրոնզե (2011) մեդալակիր:

ՀՀ լավագույն մարզիկ (2012), ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ (2012) և 1-ին (2014) աստիճանների մեդալներ:

ՋՈՒԼՖԱԼԱԿՅԱՆ Լևոն Արսենի (ծ. 1964), հունա-հռոմ. ոճի ըմբիշ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1986): ՀՀ ֆիզկուլտուրայի և ս. վ. գ. (2002): Արսեն *Ջուլֆալակյանի* հայրը: ՀՀ հունա-հռոմ. ըմբշամարտի ազգ. հավաքականի գլխ. մարզիչ (1999-ից): Օլիմպ. խաղերի (1988), Եվրոպայի, աշխարհի (1986) և ԽՍՀՄ (1983) չեմպիոն: Աշխարհի գավաթակիր (1985):

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1986), ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալ (2012):

ՋՈՒԽՏԱԿ ՎԱՆՔ, Պետրոսի վանք, Գիշերավանք, XII–XIII դդ-ի ճարտ. հուշարձան ՀՀ Դիլիջան ք-ից 3 *կմ* հս-արմ.՝ անտառապատ լ-լանջին: Բաղկացած է 2 եկեղեցուց (այստեղից՝ «Ջուխտակ» անվանումը). Սբ Գրիգորը գմբեթավոր դահլիճ է՝ կիսաշրջանաձև Ավագ խորանի 2 կողմերում երկհարկ ավանդատներով, Սբ Աստվածածինը (1201, կառուցող՝ վանահայր Հայրապետ) թաղածածկ, երկթեք տանիքով դահլիճ է՝ խորանի 2 կողմերում նեղ ավանդատներով:

ՋՈՒՀԱՐՅԱՆ Թորգոմ Գևորգի (1905–1988), մանկավարժ, մեթոդիստ: Մանկավարժ. գիտ. դ-ր (1968), պրոֆ. (1969): Հեղինակ է հայոց լեզվի, գրկ-յան, պատմության ուսուցման մեթոդիկայի հարցերին նվիրված աշխ-ների:

ՋՈՒՀԱՐՅԱՆ Օլգա Աշոտի (ծ. 1936), գյուղատնտես-էկոլոգ: Կենսբ. գիտ. դ-ր (1990), պրոֆ. (1991): Աշխ-ները վերաբերում են հողի, մշակաբույսերի, ծառատեսակների վրա տեխնածին աղտոտվածությանը, էկոհամակարգերի վրա ծծմբային անհիդրիդի, ազոտի օքսիդների և այլ թունավոր նյութերի ազդեցությանը:

Տեղեկատվ. միջազգ. (1999), Էկոլոգիայի և կենսագործունեության անվտանգության (1996), ՌԴ Բնական (2000) ԳԱ-ների անդամ, Ռիսկի վերլուծության Հայաստանի էկոլոգիայի հիմնադրամի նախագահ (2000):

ՋՈՒՂԱ, Ջողա, ք. Սյունիքի նհնգ-ի Երնջակ գվթ-ում՝ Երասխի ձախ ափին՝ խոր կիրճում՝ այժմյան Նախիջևանի Ջուլֆայի շրջանի Ջուղա գ-ի մերձակայքում: Առաջին անգամ հիշատակում է Մովսես Խորենացին: Ջ-ի զարգացումն սկսվել է X–XII դդ-ից. Արևելքի և Արևմուտքի հետ տարանցիկ առևտրի ճանապարհին էր: 1604–05-ին Հայաստանից Պարսից շահ *Աբբաս I*-ի կազմակերպած բռնագաղթին ենթարկվել են նաև Ջ-ի բնակիչները: Նրանք բնակեցվել են Սպահանի մոտ, հիմնադրել *Նոր Ջուղան*: Կյանքը Ջ-ում շարունակվել է մինչև 1848-ը, երբ բնակիչները տեղափոխվել են քիչ արլ., որտեղ էլ Չորուս լ-ան փեշին հիմնադրել են Ջ. գյուղը:

ՋՈՒՂԱՅԻ ԲԱԲԲԱՆ, հայ-ի «ում» ճյուղի բարբառ: Խոսել է Պարսկաստանի Նոր Ջուղայի որոշ արվարձանների, նաև Շիրազի, Հնդկաստանի հայ բնակչությունը: Ունի քառաստիճան (բ՛–բ–պ–փ) բաղաձայն. համակարգ: Ջ. բ. ուսումնասիրել է Հ. Աճառյանը («Քննություն Նոր-Ջուղայի բարբառի», 1937):

ՋՈՒՂԱՅԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ, Ջուղայից արմ.՝ 3 բլրի վրա և նրանց շուրջը: 1648-ին կար լավ պահպանված շուրջ 10 հզ. խաչքար (IX–XVII դդ.): 1903–04-ին խաչքարերի (երկթող. շին-յունից հետո) մեծ մասը ոչնչացվել է (արձանագրվել է շուրջ 5 հզ.): 1915-ի, 1928–29-ի տվյալներով գրանցվել է 3000 խաչքար և մի քանի հզ. տապանաքար, 1971-ին և 1973-ին՝ 2707, եկեղեցիներում ու Ամենափրկիչ վանքի գերեզմանատներում և այլուր՝ ևս 250 խաչքար, շուրջ 1000 տապանաքար: 1998–2006-ին ադրբ. իշխանությունները հիմնահատակ ոչնչացրել են Ջ. գ.:

ՋՈՒՂԱՅԻ ԳՐՁՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, գործել է XII–XVII դդ.-ում: Ամենահին ձեռագիրը 1286-ի է (գրիչ՝ Սարգիս), վերջինը՝ 1605-ի (գրիչ՝ Ոստակես արեղա): 1325-ին Խաչատուր գրիչն ընդօրինակել է Շաշոց (Մոնդ., ձեռ. № 6235): 1388-ին Ավետարան է պատկերազարդվել Սբ Ամենափրկիչ վանքում: Կենտրոնում է գործել գրիչ ու մանրանկարիչ *Մարիամը*, մատյաններ են ընդօրինակել Հակոբ Ջուղայեցին, Բարսեղ վրդ-ը (1603, Մոնդ., ձեռ. № 8243), Երեմիա երեցը (1600, Մոնդ., ձեռ. № 2019), Մկրտիչը (Ավետարան, 1603), Խաչատուր Խիզանեցին, Հովհան Դարգամարգեցին, Հովհաննես գրիչը, Հակոբ քհն. և ուր.:

ՋՈՒՄԱԳՈՒԼՈՎ Ապաս (ծ. 1934), Ղրղզստանի վարչապետ՝ 1986–91-ին և 1993–1998-ին: 1979-ից՝ Ղրղզստանի կոմկուսի ԿԿ քարտուղար: 2005–07-ին՝ Ղրղզստանի արտակարգ և լիազոր դեսպան ՌԴ-ում, Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի և Ֆինլանդիայի Հանրապետություններում, նստավայրը՝ Մոսկվայում:

ՋՈՒՄԲԼԱՏ Քամալ (1917–1977), Լիբանանի Առաջադիմ. սոց. կուս-յան հիմնադիր (1949) առաջնորդներից: Սպանվել է:

Լ.Ենինյան միջազգ. մրց. (1972):

«ՋՈՒՄՀՈՒՐԻԵԹ» («Cumhuriet» – «Հանրապետություն»), հաս-քաղ. օրաթերթ (թուրք., 1924-ից, Ստամբուլ):

ՋՈՒՆԱԻԴ ԽԱՆ (Մուհամմեդ-Կուրբան Սերդար, 1857–1938), բասմաչների ղեկ-ներից Խորեզմում և Թուրքմենստանում: 1918–20-ին՝ Խիվայի դիկտատոր: Պարտություն է կրել Կարմիր բանակից: 1931-ին փախել է Աֆղանստան:

ՋՈՒՆԳԼԻՆԵՐ (անգլ.՝ Jungle, < ջանգալ, որը հինդի և մարաթիի լեզուներով՝ թփուտներ), արևադարձների և մերձարևադարձների ծառաթփ. բուսուտներ՝ բարձր, կոշտ ցողունավոր խոտերի համակցությամբ: Ջ-ին բնորոշ են ռոտանգ. արմավենին, ակացիան, բարձրաճ խոտաբույսերը (հսկա հնդկեղեգ, շաքարեղեգ, գեղմնախոտ ևն): Հանդիպում են առավելապես Հվ-արլ. Ասիայում (Հնդկաստան, Հնդկաչին, Զոնդյան կղզիներ ևն): Հաճախ Ջ-ին սխալ անվանում են ճահճացած արևադարձ. անտառների դժվարանցանելի հատվածներ:

ՋՈՒՆԴԻԿ, XIII դ-ի ճարտ.: *Զաքարև Բ Մեծի* հրամանով 1206-ին Անիում կառուցել է բուրգեր և դարպաս:

ՋՈՒՉԻ (ծ. թ. անհտ–մոտ 1227), մոնղոլ. զորահրամ.: *Չինգիս խանի* ավագ որդին: Չինաստանի և Միջին Ասիայի նվաճման մասնակից, 1224-ին հիմնադրել է ժառանգ. տիրույթ Ջուչիի ուլուսը: 1240-ական թթ-ից՝ *Ոսկե Հորդա*:

ՋՈՒՍՈՅՏԻ, Ջուսոև, Նաֆիի Գրիգորիի (ծ. 1925), օս գրող, գրականագետ: Օսիայի ժող. գրող: Հեղինակ է «Նախնիների արյունը» (1965), «Տասներկու վերքը՝ ինչպես մի վերք…» (1970), «Սիրդոնի արցունքները» (1979) վեպերի, նաև վիպակների, քնար. բանաստեղծությունների ժող-ների:

ՋՈՒՍՈՒԵՎ, Սոորոնբայ (ծ. 1925), ղրղզ բանաստեղծ: Ղրղզ. ԽՍՀ ժող. բանաստեղծ (1981): Հեղինակ է «Հույս» (1960) բանաստեղծությունների ու պոեմների, «Կույտավոր ամպեր» (1969), «Ոսկե չինարը» (1973), «Տարիների հորձանուտը» (1981), ՀՄՊ-ի մասին «Բոսոր արևը» (1968) վիպակների ժող-ների:

ՋՈՒՎԵՅՆԻ Ալա ադ-Դին Աթա Մալիք բին Մուհամմադ (1226–1283), պարսիկ մատենագիր: 1262-ից եղել է Բաղդադի, Իրաքի և Խուժաստանի կուսակալ: 1260-ին ավարտել է «Աշխարհակալի պատմություն» եռահատոր աշխ-ը, որի 2-րդ և 3-րդ հատորներում կարևոր տեղեկություններ կան նաև իլխանության ժամանակաշրջանի Հայաստանի պատմության վերաբերյալ:

ՋՈՒՏ (Corchorus), **կորքոր**, լորենազգիների ընտանիքի բույսերի ցեղ: Հայտնի է մոտ 40 տեսակ: Հայրենիքը Հնդկաստանն է: Օգտագործվում է որպես հումք մանածագործության մեջ. բամբակենուց հետո 2-րդն է աշխարհում: Բարձր.՝ մինչև 3,5 *մ*՝ կանգուն, ճյուղավոր ցողունով: Արմատը՝ առանցքային: Պտուղը տուփիկ է, հասունանալիս բացվում է 5–7 փեղկով: Թելի ելքը չոր ցողուններում 20–25 % է: Թելի համար բերքը հավաքում են, երբ բույսերի 50 %-ի վրա սկսում են առաջանալ 1-ին տուփիկները:

ՋՈՒՐ, H_2O, **ջրածնի օքսիդ**: Անհոտ, անհամ, անգույն (հաստ շերտերում՝ երկնագույն երանգով), թափանցիկ հեղուկ է, խտ.՝ 1,000 *գ/սմ*^{3}, $t_{հալ.}$՝ 0°C, $t_{եռ.}$՝ 100°C: Բնության մեջ ամենատարածված նյութերից է (ջրոլորտն զբաղեցնում է երկրագնդի մակերևույթի 71 %-ը): Ջ. կյանքի գոյության սկզբնաղբյուրն է: Կազմում է մարդու օրգանիզմի 65 %-ը: Ջ. արդ. և գղտ. արտադր-յան գրեթե բոլոր տեխնոլոգ. շարժընթացների հիմն. բաղադրիչն է: Հատուկ մաքրության Ջ. անհրաժեշտ է սննդամթերքի արտադր-յան, բժշկության, քիմ. վերլուծության մեջ, արդ-յան նորագույն բնագավառներում: Ջ-ի կիրառության շրջանակների ընդլայնումը կարևորում է ջրամաքրումը, ջրամբարների աղտոտման և սպառման դեմ պայքարը:

ՋՈՒՐԵՄԿՈՒ (Giurescu) Կոստանդին (1901–1977), ռումին պատմաբան: Ռումինիայի ԳԱ ակադ.: Հայտնի է իր «Ռումինների պատմություն» մենագրությամբ (հ. 1, 2, 1935, 1937): Մի շարք աշխ-ներում անդրադարձել է Ռումինիայի հայկ. գաղութի պատմությանը:



Ռ, հայ. այբուբենի 28–րդ տառը, անվանումը՝ ռա: Ունի ***գրչագիր***, ***երկաթագիր***, ***բոլորգիր***, ***շղագիր***, ***նոտրգիր*** տառատեսակները: Հայ–ի առաջնալեզվային լեզվատամնային շփական ձայնորդ բաղաձայն հնչյուն (հնչույթ) է: Թվային արժեքը՝ 1000:

ՌԱ. (Ռե), արևի աստվածը եգիպտ. դիցյան մեջ, որին երկրպագել են որպես աստվածների հոր և թագավորի: Նույնացվել է ***Ամոն*** աստծու հետ, պատկերվել փարավոնի կերպարանքով, բազեի (երբեմն՝ վիթխարի կատվի) գլխով և մարդու տեսքով՝ պսակված արևի սկավառակով:

«ՌԱ» (հին եգիպտ. ***Ռա*** աստծու անունով), պապիրուսից պատրաստված նավակ (լայն.՝ 5 *մ*, երկ.՝ 12 *մ*), որով Թ. ***Հեյերդալի*** գլխավորությամբ արշավախումբը (7 հոգի) փորձել է ապացուցել, որ հին եգիպտացիները կարող էին նավարկելով հասնել Ամերիկա: 1–ին փորձը (1969) անհաջող էր: 1970–ին «Ռ–2»–ը, դուրս գալով Սաֆայից (Մարոկկո), 55 օր անց հասել է Բարբադոս կղզի:

ՌԱԱԲ (Raab) Յուլիուս (1891–1964), Ավստրիայի դաշնության կանցլեր՝ 1953–1961–ին: 1951–60–ին՝ Ավստրիայի ժող. կուս–յան նախագահ:

ՌԱԲԱԹ, ***Մարոկկոյի*** մայրաքաղաքը (1956–ից), Ռաբաթ Սալե Ջամմուր Ջաեր մարզի վարչ. կենտրոնը՝ Ատլանտ. օվկ–ի ափին: Բն.՝ 1,8 մլն (Սալե ք–ի հետ և արվարձաններով, 2010): Տրանսպորտ. հանգույց է: Ունի օդանավակայան: Գործում են համալսարաններ, թանգարաններ (ազգագր., հնագիտ. ևն): Հիմնադրվել է XII դ–ում: 1912–56–ին՝ պրոտեկտորատի ֆրանս. գոտու վարչ. կենտրոնը: Ճարտ. հուշարձաններից են Ուդայա ամրոցը (XII–XVII դդ.), Հասանի մզկիթը և «Հասանի աշտարակ» մինարեն (XII դ.), Մեծ մզկիթը (XIV դ.):

ՌԱԲԲԻ (եբր. – բառացի՝ ուսուցիչ), հուդայական պաշտամունքի բարձրաստիճան սպասավոր, համայնքի օրենսգետ, դատավոր: «Ռ.» անվանումից առաջացած Բաբունի բարձրագույն և պատվ. տիտղոսը տրվել է յոթ առավել հռչակավոր և իմաստուն անձանց (հետագայում առաքյալներն այդ տիտղոսը վերագրել են նաև Հիսուս Քրիստոսին): Միջնադար. Հայաստանում նույնպես այդ տիտղոսով մեծարվել են մի շարք հայ անվանի գիտնականներ:

ՌԱԲԴՈՎԻՐՈՒՄՆԵՐ, ՌՆԹ պարունակող վիրուսների ընտանիք: Առաջացնում են մարդու և կենդանիների վարակիչ հիվանդություններ՝ տարբեր կլինիկ. նշաններով (օր.՝ կատաղություն): Ռ. են նաև բույսերի որոշ վիրուսներ:

ՌԱԲԵՄԱՆԱՆՋԱՐԱ (Rabemananjara) Ժակ Ֆելիսիեն (1913–2005), մադագասկարցի ֆրանսիագիր գրող: 1972–ից՝ Ֆրանսիայում: Հեղինակ է հակագաղութատիր. թեմաներով «Յոթլարանի քնար» (1948), «Հազարամյա ծիսակատարություններ» (1955) ռոմանտիկ. բանաստեղծությունների ժող–ների, «Այգաբացի ծովագնացները» (1957) ողբերգության, նաև հրապարակախոս. գործերի:

ՌԱԲԻ (Rabi) Իզիդոր Այզեկ (1898–1988), ամերիկացի հրեա ֆիզիկոս: Աշակել է ատոմ. միջուկների մագնիս. մոմենտների չափման ռեզոնանս. եղանակ (Ռ–ի եղանակ), չափել (1939) պրոտոնի և դեյտրոնի մագնիս. մոմենտները: Նոբելյան մրց. (1944):

ՌԱԲԻՆ (Rabin) Իցիակ (1922–1995), Իսրայելի վարչապետ՝ 1974–77 և 1992–95–ին: «Ավոդա» կուս–յան նախագահ: Սպանվել է ահաբեկչի ձեռքով: Խաղաղության Նոբելյան մրց. (1994):

ՌԱԲԻՆՈՎԻՉ Իսահակ Սիսևևիչ (1886–1977), շին. մեխանիկայի բնագավառի հրեա գիտնական: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1946), ճարտարագետ, գեն–մայոր (1943): Սոց աշխ. հերոս (1966): Աշխ–ները վերաբերում են շինությունների դինամիկայի և ամրության հարցերին:

ՌԱԲԼ (Rabl) Կառլ (1853–1917), ավստրիացի կենսաբան: Աշխ–ները վերաբերում են փափկամարմինների սաղմնաբանությանը, ողնաշարավորների անատոմիային, բջջաբանությանը: Առաջարկել է (Թ. ***Բովերիի*** հետ) «քրոմոսոմների անհատականության տեսությունը», որն ավելի ուշ օգտագործվել է ժառանգականության քրոմոսոմ. տեսությունը հիմնավորելու համար:

ՌԱԲԼԵ (Rabelais) Ֆրանսուա (մոտ 1494–մոտ 1553), ֆրանսիացի գրող: Ռ. հաշխ. գրկ–յան մեջ զավեշտի, ծիծաղի խոշորագույն վարպետներից է, նրա երգիծանքի արվ–ի նախասիրած եղանակը չափազանցությունն է, ծիծաղաշարժ գրոտեսկը: Հեղինակ է «Գարգանտյուան և Պանտագրյուելը» (հ. 1–4, 1532–52, հ. 5՝ «Պանտագրյուելի հինգերորդ գիրքը», 1564, հայ.՝ 1972) ժող. վեպի, որտեղ ներկայացրել է Ֆրանսիայի կրոն., քաղ. կյանքը, մանկավարժ. ու գիտ. միտքը, հաս. կենցաղն ու հոգևոր ձգտումները: Վեպում հեղինակն ակնածանքով է ներկայացնում Հայաստանը, Հայոց Արտաշես և Տրդատ թագավորներին:

ՌԱԲՈՏՆՈՎ Յուրի Նիկոլաևիչ (1914–1985), ռուս. մեխանիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1958, թղթ. անդամ՝ 1953–ից): Աշխ–ները վերաբերում են թաղանթների, առաձգականության, սաիքի տեսության–ներին և նյութի քայքայման հարցերին:

ՌԱԳՈԶԻՆԱ Նատալյա Յուրևնա (ծ. 1976), ռուս մարզուհի: ՌԴ ս. վ. վ. (1998): Բռնցքամարտի աշխարհի չեմպիոնուհի (2010, պրոֆեսիոնալ բռնցքամարտի 2–րդ միջին քաշ): Հաղթել է 22 (22–ից) մրցամարտում: Աշխարհի և ՌԴ բազմակի չեմպիոն (սիրող. բռնցքամարտ և քիքբոքսինգ):

ՌԱԳՈՒԼԻՆ Ալեքսանդր Պավլովիչ (1941–2004), ռուս. հոկեյիստ (տափօղակով): ԽՍՀՄ ս. վ. վ. (1968): Օլիմպ. խաղերի՝ եռակի (1964, 1968, 1972), աշխարհի՝ բազմակի չեմպիոն:

ՌԱԳՈՒԼՍԿԻՍ (Ragulskis) Կազիմերաս Միկոլ (ծ. 1926), մեքենագիտ–յան բնագավառի լիտվացի մեխանիկոս: Լիտվ. ԽՍՀ ԳԱ ակադ. (1987), ՌԳԱ թղթ. անդամ (1987): Աշխ–ները վերաբերում են ճշգրիտ թրթռամեխանիկային, ալիք. շարժընթացներին, հատուկ ճշգրիտ միկրոմանիպուլյատորներին ու միկրոռոբոտներին:

ՌԱԴ (անգլ.՝ radiation absorbed dose – ճառագայթման կլանված չափաբաժին արտահայտության համառոտագրությունը), կլանված ճառագայթման արտահամակարգ. միավոր, համապատասխանում է 1 *գ* զանգվածով մարմնի կլանած 100 *էրգ* ճառագայթման էներգիային: 1 *ռադ* = 0,01 *Ջ/կգ* = 2,388 · 10^{-6} *կալ/գ*:

ՌԱԴԱ, 1. ժող. ներկայացուցիչների ժողովների և խորհուրդների պատմ. անվանումն Ուկրաինայում, Բելառուսում, Լիտվայում, Լեհաստանում և Ռուսաստանում: 2. Պետ. իշխանության մարմինների անվանում Բելառուսում և Ուկրաինայում 1917–18–ին (Բելառուս. Ռ., Կենտր. Ռ.): 3. Խորհուրդ Ուկրաինայում (ժող. պատգմ–ների Ռ., Նախարարների Ռ. ևն):

ՌԱԴԴԵԻ ԺԱՅՌԱՅԻՆ ՄՈՂԵՍ (Darevskia raddei), **նաիրյան ժայռային մողես**, իսկական մողեսների ընտանիքի Դարևսկիա սեռի մողես: Նուրբ կազմվածքով, տափակ մարմնով փոքր մողես է, երկ–յունը տարիքի հետ փոխվում է (2,1–7,6 *սմ*), պոչը կրկնակի երկար է, ինքնահատվող: ՀՀ–ում տարբերակվել է 2 ենթատեսակ՝ Ռադդեի դարևսկիա և նաիրյան դարևսկիա՝ Շիրակի, Արագածոտնի, Կոտայքի, Գեղարքունիքի և այլ մարզերի ժայռոտ և խիստ քարքարոտ վայրերում: Մնվում է մանր հոդվածոտանիներով, փափկամարմիններով:

ՌԱԴԴԵԻ ԼԵՌՆԱՅԻՆ ԻԺ (Vipera raddei), **հայկական իժ**, իժերի ընտանիքի իժերի ենթաընտանիքի օձ: Մարմնի երկ–յունը

տարիքի հետ փոխվում է (18–99 *ամ*), պոչը կարճ է: Արուները խոշոր են էգերից: Մնվում է մանր հոդվածոտանիներով և մանր ողնաշարավորներով: Օգտագործվում է ԳՀ նպատակներով: Կծածը վտանգավոր է մարդու և կենդանիների համար: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:


ՌԱԴԵԿ, Սոբելսոն Կառլ (Sobelsohn Karol) Բեռնհարդովիչ (1885–1939), միջազգ. ս–դ. շարժման հրեա գործիչ (Լեհաստան, Գերմանիա): Լ. Դ. *Տրոցկու* գործուն կողմնակիցներից, Արևելքի ժողղ–ների կոմ. համալսարանի ռեկտոր (1925–ից): Բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ՌԱԴԵՎ, Ռումեն Գեորգիև (ծ. 1963), բուլղար ռազմ. և քաղ. գործիչ: Բուլղարիայի նախագահը՝ 2017–ի հունվ–ից: Գեն–մայոր (2014), 2014–16–ին՝ Բուլղարիայի ՌՕՈՒ–ի հրամ.:

ՌԱԴԵՎՄԿԻ Խրիստո (1903–1996), բուլղար բանաստեղծ: Հեղինակ է քաղաքաց. թեմաներով «Զարկերակ» (1936), «Երբ չէր բավարարում օդը» (1945), «Կապանքազերծ երկիր» (1966), «Մեր նախամայրը» (1985) քնար. բանաստեղծությունների ժող–ների: Դիմիտրովյան մրց. (1950, 1951):

ՌԱԴԵՑԿԻ (Radetzky) Յոզեֆ (1766–1858), ավստրիացի զորապետ, ֆլդմ. (1836): 1813–1814–ին՝ Ֆրանսիայի դեմ պատերազմում դաշնակից զորքերի գլխ. հրամ., 1831–57–ին՝ Հս. Իտալիայում ավստր. բանակի գլխ. հրամ. և, միաժամանակ, 1849–57–ին՝ այդ տարածաշրջանի գեն–նահանգապետ: Ճնշել է 1848–49–ի հեղ–յունն Իտալիայում:

ՌԱԴԻՈՒՍ (լատ.՝ radius – ճառագայթ), AB աղեղին, որի երկ–յունը հավասար է շրջանագծի OA շառավղին, հենված կենտր. անկյան չափը (նկ.). հավասար է 57°17′45″–ի: Օգտագործվում է որպես անկյունների չափման միավոր: 30, 45, 60, 90°–ները հավասար են համապատասխանաբար $\pi/6$, $\pi/4$, $\pi/3$, $\pi/2$ *Ռ*–ի: Ընդհ. իմաստով՝ $180°/n$ անկյունը պարունակում է π/n Ռ.:



ՌԱԴԻԱՏՈՐ (լատ.՝ radio – ճառագայթներ), 1. սարք՝ նաշ–ների հովացման համակարգում շրջանառվող հովացնող հեղուկը կամ յուղը հովացնելու համար: Իրականացվում է արտաքին պատերից ջերմության ճառագայթման և շրջակա միջավայրի հետ ջերմփոխանակության շնորհիվ: 2. Տաքացնող սարք ջեռուցման համակարգում. բաղկացած է բաժանմունքներից, որոնց ներքին խողովակներով շրջահոսում է ջերմակիրը (ջուր, գոլորշի): 3. Աշխ–ում տաքացող ռադիոտեխ. տարրերի (ռեզիստոր, կիսահաղորդիչ սարքեր, էլեկտրոն. լամպեր ևն) հովացման սարքեր (հաճախ՝ կողավոր, ձողավոր թիթեղների տեսքով):

ՌԱԴԻՇԵՎՄԿԻ Անիսիմ Միխայլովիչ (ծ. թ. անհտ–1629–ի և 1631–ի միջև), ռուս. տպագրիչ, թեղանոթագործ (ծագումով՝ Լիտվ. մեծ իշխանությունից): 1603–ին Մոսկվայում բացել է սեփ. տպարան, որտեղ տպագրել է Քառավետարան (1606), «Կանոնադրություն կամ Կանոնագիրք եկեղեցական» (1610): Հեղինակ է «Զինվորական, թնդանոթաձգային և այլ գործերի կանոնագիրք…» (1620, հրտ.՝ մաս 1, 2, 1777, 1781) ձեռնարկի:

ՌԱԴԻՇՉԵՎ Ալեքսանդր Նիկոլաևիչ (1749–1802), ռուս մտածող, գրող: Հեղինակ է «Աշխարհի արարումը» (մոտ 1779–82, անավարտ), «Խոսք Լոմոնոսովի մասին» (1780) հրապարակախոս. ակնարկների, «Ազատություն» (1783) ներբողի, «Ֆ. Վ. Ուշակովի վարքը» (1789) վիպակի, «Ճանապարհորդություն Պետերբուրգից Մոսկվա» (1790, հայ.՝ 1950) վեպի, որտեղ անդրադարձել է ռուս. իրականության բոլոր կողմերին, ապստամբության կոչել գյուղացիությանը: Գիրքը տպագրվել է անանուն, սակայն շուտով այն բռնագրավվել է, հեղինակը հայտնաբերվել է, ձերբակալվել և Ռ. 1790–ին աքսորվել է: Վերադարձից հետո (1797) Ռ. կազմել է ազատ օրենսդր. նախագծեր, որի պատճառով նրան սպառնացել են նորից աքսորել: Ի նշան բողոքի՝ Ռ. ինքնասպան է եղել: Հեղինակ է նաև «Մարդու, նրա մահկանացու և անմահ լինելու մասին» (1792–95) փիլ. աշխ–յան:

ՌԱԴԻՈ (լատ.՝ radio – ճառագայթել), 1. տեղեկույթը *ռադիոալիքներով* հեռ–յուններ հաղորդելու սարք: Եզրույթը գործածվում է 1910–ական թթ–ից՝ «անթել հեռագիր» հասկացության իմաստով: 2. Գիտ–յան և տեխնիկայի ոլորտ. ուսումնասիրում է այդ եղանակի և գործն. իրականացման հիմքում ընկած ֆիզ. երևույթները:

ՌԱԴԻՈԱԶԱԼՈՂԱՆ, ծով. ազդալողան, որի վրա տեղադրված է չուղղորդված ճառագայթման անտենայով ռադիոհաղորդիչ: Օգտագործվում է նավագնացության մեջ՝ նավարկուղիների սահմանը որոշելու, նավերի համար վտանգավոր տեղերը ճշտելու, օվկ–ի և նրա հատակի գիտ. հետազոտությունների և այլ նպատակներով:

ՌԱԴԻՈԱԼԻՔԱՍԱՐ, սնամեջ մետաղե խողովակ կամ դիէլ. ձող, որոնց ներսում առանցքի երկայնքով տարածվում են ռադիոալիքները՝ ներքին պատերից բազմապատիկ անդրադարձումների և անդրադարձած ալիքների ինտերֆերենցիայի արդյունքում: Ալիքների տարածումը Ռ–ով հնարավոր է, եթե նրա չափերը համաչափելի են ալիքների երկ–յանը, որով պայմանավորված է Ռ–ի օգտագործումը հիմնականում ԳՀՀ ընդգրկույթում: Ռ. կիրառվում են ռադիոտեղորոշման և այլ կայաններում՝ էներգիան հաղորդիչից հաղորդիչ անտենա և ընդունող անտենայից ընդունիչին փոխանցելու համար, օգտագործվում են որպես ճառագայթող տարրեր ալեցիրներում ևն:

ՌԱԴԻՈԱԼԻՔՆԵՐ, $\lambda = 5 \cdot 10^{-5} – 10^{8}$ *մ* երկ–յամբ ($6 \cdot 10^{12}$ *Հց*–ից մինչև մի քանի *Հց* հաճախության) էլեկտրամագնիս. ալիքներ: λ–ից կախված մերձներկր. տարածությունում Ռ–ի տարածման, գեներացման, ուժեղացման և ճառագայթման առանձնահատկությունները տարբեր են: Առանձնացվել են գերերկար ($\lambda > 10$ *կմ*), երկար (10–1 *կմ*), միջին (1000–100 *մ*), կարճ (100–10 *մ*) և գերկարճ (10 *մ* –1 *մմ*) Ռ.: Գերկարճ ալիքներն իրենց հերթին բաժանվում են *մ*–ային, *դմ*–ային և *մմ*–ային ընդգրկույթների, ինչպես նաև ենթամիլիմետրային ալիքների, որոնց $\lambda = 1 – 0{,}05$ *մմ*:

ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ԱՂՏՈՏՈՒՄ ԿԵՆՍԱԼՈՐՏԻ, *ռադիոնուկլիդների* ներթափանցումը կենդանի օրգանիզմներ և նրանց ապրելավայրերը (մթն., ջրոլորտ, հող) միջուկ. պայթյունների, ռադիոակտիվ թափոնների շրջակա միջավայր դուրս բերելու տարատեսակ պատճառներով:

ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐ, նյութեր, որոնք պարունակում են ռադիոնուկլիդներ: Օգտագործվում են բժշկակենսբ. հետազոտությունների, հիվանդությունների ախտորոշման ու բուժման համար և ռադիոքիմիայում:

ՌԱԴԻՈԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ, տես *Ճառագայթակտիվություն*:

ՌԱԴԻՈԱՍՏՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, աստղագիտ–յան բաժին, որը երկն. մարմիններն ուսումնասիրում է նրանց ռադիոճառագայթմամբ՝ *ռադիոաստղադիտակներով*: Վերերկրյա ռադիոաստղադիտումներ կարելի է իրականացնել ալիքների 1–30 *մմ* երկ–յան ընդգրկույթում (ավելի կարճ և երկար ալիքները կլանվում են մթն–ում): ԵԱՄ–ների վրա տեղադրված ռադիոաստղադիտակների համար այդ միջակայքն զգալիորեն մեծանում է: Ռ–յան եղանակներով բացահայտվել են էլեկտրամագնիս. ճառագայթման նոր տիեզ. աղբյուրներ (ռադիոգալակտիկաներ, բարախիչներ, միջաստղ. գազ), ինչպես նաև մնացորդ. ճառագայթումը: Ռ. Հայաստանում զարգացել է Պարիս *Հերունու* ջանքերով: Տես նաև *Ռադիոօպտիկական ապտղադիտակ*:

ՌԱԴԻՈԱՍՏՂԱԴԻՏԱԿ, տիեզ. օբյեկտների ռադիոճառագայթման ընդունման և գրանցման սարք: Ռ–ով ուսումնասիրում են ռադիոճառագայթման ինտենսիվությունը, սպեկտրը, խտությունը, բևեռացումը, որոշում աղբյուրի կոորդինատները երկնոլորտում: Կազմված է ուղղորդված ալեցիրից և ռադիոչափից: 2–ից ավելի ալեցիր ունեցող Ռ–ները, որոնք աշխատում են միացյալ համակարգում, կոչվում են ***ռադիոինտերֆերոմետրեր***:

ՌԱԴԻՈԲԱՐՁՐԱՉԱՓ, թռչող սարքերի (ինքնաթիռ, տիեզ. սարք ևն) թռիչքի բարձր–յան չափման գործիք, որի գործողությունը հիմնված է սարքից մինչև չափման վայրը ռադիոալիքի տարածման ժամանակի չափման վրա: Օգտագործվում է ռադիոնավագնացության և ռադիոտեղորոշման մեջ:

ՌԱԴԻՈԳԱԼԱԿՏԻԿԱՆԵՐ, *գալակտիկաներ*, որոնք ռադիոճառագայթման հզոր աղբյուրներ են: Ռ–ի ռադիոճառագայթման հզորությունը գերազանցում է նրանց օպտիկ. լուսատվությունը և ռադիոընդգրկույթում կազմում է $10^{42}–10^{44}$ *էրգ /վ*:

ՌԱԴԻՈԳԾԵՐ, սպեկտր. գծեր, որոնք դիտվում են միջաստղ. միջավայրի մոլ–ների սպեկտրի ռադիոընդգրկույթում, օր.՝ ջրածնի (λ = 21 *սմ*), հիդրօքսիլի (18 *սմ*), ջրի (1,35 *սմ*), հելիումի (18 *սմ*) ևնի համար:

ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ, գիտ–յան և տեխնիկայի մի շարք ոլորտների հավաք. անվանումը, որոնք զբաղվում են տեղեկույթի փոխանցման, ստուգման և վերափոխման հարցերով՝ ռադիոհաճախ. էլեկտրամագնիս. տատանումների և ալիքների օգտագործմամբ: Հիմնականներն են ռադիոտեխնիկան և էլեկտրոնիկան: Ռ–ի եղանակներն ու միջոցներն օգտագործվում են ժամանակակից գիտ–յան և տեխնիկայի բազմաթիվ ոլորտներում:

ՌԱԴԻՈԸՆԴՈՒՆԻՉ, ռադիոազդանշանների՝ ալեցիրով (արտաքին կամ ներկառուցված) ընդունման սարք: Ռ. են ռադիոընդունիչը, հեռուստացույցը, ռադիոտեղորոշիչը ևն: Հիմն. տարրերը՝ հաճախականության ընտրության էլ. շղթաներ (տատանող. կոնտուրներ, էլ. զտիչներ ևն), անհրաժեշտ կայանի վրա կարգաբերելու համար էլ. տատանումների ուժեղարարներ, դետեկտոր, ընդունված տեղեկույթի վերարտադրման

միջոցներ (օր.՝ բարձրախոս, կինեսկոպ): Առավել տարածված է գերհետերոդին. Ռ.:

ՌԱԴԻՈԻԺՈՏՊԱՅԻՆ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ բժշկության մեջ, օգտագործվում են ռադիոակտիվ իզոտոպներ և միացություններ, նշակիր *ռադիոնուկլիդներ*՝ ներզատիչ գեղձերի, մարսողության, ոսկր., սիրտանոթ., արյունաստեղծ համակարգերի, գլխուղեղի ու ողնուղեղի, թոքերի և այլ օրգանների հետազոտման, նաև բուժման արդյունավետությունը գնահատելու համար:

ՌԱԴԻՈԻՆՏԵՐՖԵՐՈՄԵՏՐ, 2 կամ ավելի ալեցիրներով *ռադիոապտղադիպակ*, որոնք տեղադրված են որոշակի հեռավոր և միացված են 1 ընդունիչի: 10 *կմ* բազայով Ռ–ի լուծունակությունը 1″ է, իսկ գերերկար՝ երկրագնդի տրամագծին համաչափելի բազայովինը՝ մինչև 0,001″:

ՌԱԴԻՈԿԱՊ, էլեկտրակապ, որն իրականացվում է *ռադիոալիքների* միջոցով: Հաղորդագրության փոխանցումը կատարվում է ռադիոհաղորդչի և հաղորդիչ ալեցիրի միջոցով: Ռադիոհաղորդիչում ձևավորվում են ռադիոազդանշաններ՝ կրող հաճախականության էլ. տատանումներ, որոնք մոդուլվում են ըստ համապատասխան ամպլիտուդի, հաճախության կամ փուլի: Ռադիոազդանշանները հաղորդիչ ալեցիրով ճառագայթվում են (էլեկտրամագնիս. ալիքների տեսքով) շրջակա միջավայր, հասնում ընդունիչ ալեցիրին և մտնում ռադիոընդունիչ, որտեղ նրանք ուժեղացվում ու վերափոխվում են հաղորդագրությանը համապատասխան ազդանշանների: Ռ. առաջինն իրականացրել է ռուս գյուտարար Ա. Ս. *Պոպովը*: Ռ–ի գծերն օգտագործվում են հեռախոս. (խոսակց.) հաղորդագրությունը, հեռագիրը, ֆաքսիմիլային, թվային տեղեկույթը, ռադիո– և հեռուստատես. ծրագրերը հաղորդելու համար:

ՌԱԴԻՈԿՈՂՄՆԱՅԻՆ, ավտոմատ ռադիոուղղորդիչ, որը տեղադրվում է թռչող սարքի կողապատին՝ ռադիոկայանի ընթացային անկյունը (թռչող սարքի երկայն. առանցքի և ուղղորդվող ռադիոկայանի ուղղության միջև) չափելու համար:

ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՈՒՄ, ՋԼՄ–ի տեսակ, ռադիոյով ձայն. ծրագրերի հաղորդումը: Կանոնավոր Ռ–ներ Հայաստանում սկսվել են 1927–ից:

ՌԱԴԻՈՀԱՃԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, $6\cdot10^{12}$ *Հց*–ից ցածր ռադիոալիքներին համապատասխանող էլեկտրամագնիս. հաճախությունները:

ՌԱԴԻՈՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԿԱՊ, էլեկտրակապ, երբ ռադիոալիքներով հաղորդվում է հեռախոս. (խոսքային) հաղորդագրություն: Տեղեկույթը միկրոֆոնով ներմուծվում է Ռ. կ–ի գիծ, իսկ նրանցից դուրս է բերվում՝ սովորաբար հեռախոսով: Միկրոֆոնը և հեռախոսը ռադիոկայաններին միացվում են անմիջականորեն կամ հեռախոսագծերով:

ՌԱԴԻՈՀԵՌԱՉԱՓ, ռադիոճառագայթներով օբյեկտի հեռ–յան չափման սարք: Տարբերում են իմպուլս. և ֆազ. (ինտերֆերենցային) Ռ–ներ: Իմպուլս. Ռ–ների գործողությունը հիմնված է Ռ–ից կարճ ռադիոիմպուլսների՝ մինչև օբյեկտն ու հակառակ անցման ժամանակի չափման վրա, ֆազայիններինը՝ չափվող հեռ–յան երկայնքով տեղավորվող ալիքների թվի որոշման վրա:

ՌԱԴԻՈՀԵՌՈՒՂԱԿՄԱՆ ԿԱՊ, էլեկտրակապ, երբ ռադիոալիքներով հաղորդվում է ընդհատ հաղորդագրություն՝ տառային, թվային և նշանային: Հաղորդիչ կայանի հեռագր. հաղորդագրությամբ մոդուլված տատանումները մտնում են Ռ. կ–ի գիծ, նրանից՝ ընդունող կայան: Ապակողավորումից և ուժեղացումից հետո հեռագր. հաղորդագրությունն ընդունվում է լսողությամբ կամ գրանցվում ընդունման հեռագրատպիչով:

ՌԱԴԻՈՃԱՌԱԳԱՅԹՈՒՄ, 1. **Արեգակի**, *մմ*–ից մինչ *մ*–ային ընդգրկույթում Արեգակի էլեկտրամագնիս. ճառագայթումը, որն առաջանում է ներքին գունոլորտից մինչև արեգակն. պսակի մարզում: Տարբերում են «հանգստացող» Արեգակի ջերմ. ճառագայթում և արեգակն. ռադիոճառագայթման առկայծումներ, որոնք կապված են Արեգակի ակտիվ հատվածների որոշ երևույթների հետ (արեգակն. բռնկումներ, պսակային նյութի արտանետումներ և հարված. ալիքներ): 2. **Տիեզերական**, տիեզ. օբյեկտների էլեկտրամագնիս. ճառագայթում՝ ալիքի մի քանի *կմ*–ից մինչև *մմ*–ի մասերի ընդգրկույթում: Գոյություն ունեն ճառագայթման ընդհատուն աղբյուրներ (ռադիոգալակտիկաներ, քվազարներ, բարախիչներ ևն) և ֆոնային ճառագայթում: Երկարալիք միջակայքում ճառագայթումը պայմանավորված է հեռավոր ռադիոաղբյուրների գումարային ճառագայթմամբ: $\lambda < 50$ *սմ* դեպքում ֆոնային տիեզ. ճառագայթման մեջ գերակշռում է մնացորդ. ճառագայթումը:

ՌԱԴԻՈՆԱՎԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ, նավերի, թռչող, կառավարվող և այլ շարժվող սարքերի՝ դիրքի, արագության, ուղղության և շարժման հետագծի որոշումը տարածության մեջ ռադիոտեխ. եղանակներով ու միջոցներով: Ռ–յան հիմն. խնդիրն օբյեկտի ուղղության և աշխարհագր. կոորդինատների ճիշտ ընտրությունն է: Այդ նպատակով օգտագործվում են ռադիոկողմնացույց, ռադիոփարոս և այլ գործիքներ ու համակարգեր:

ՌԱԴԻՈՆՈՒԿԼԻԴ, **ռադիոակտիվ նուկլիդ**, ռադիոակտիվ ճեղքմանն ընդունակ ատոմ կամ ատոմի միջուկ: Տես *Ճառագայթաակտիվություն*:

ՌԱԴԻՈԶԱՓՈՒՄՆԵՐ, էլ., մագնիս. և էլեկտրամագնիս. մեծությունների չափումներ, որոնք բնութագրում են ռադիոկապի սարքավորումների, սարքերի ու տարրերի, ավտոմատիկայի, հաշվող. տեխնիկայի աշխ–ը: Ռ–ով որոշում են, օր., ռեզիստորների, կոնդեսատորների, ինդուկտիվության կոճերի, էլեկտրավակուում. և կիսահաղորդիչ սարքերի հարաչափերը, ռադիոազդանշանների փոփոխությունների տեսքն ու բնույթը, էլեկտրոն. և ռադիոտեխ. սարքավորման աշխ. ռեժիմներն ու շահագործ. բնութագրերը, աղմուկների մակարդակն ու ճառագայթման ինտենսիվությունը: Ռ. իրականացվում են ռադիոչափ. սարքերով, ստանդարտ ազդանշանների գեներատորներով, չափիչ ուժեղարարներով, օսցիլոգրաֆներով, հոսանքի աստիճանավորված աղբյուրներով:

ՌԱԴԻՈՌԵԼԵԱՅԻՆ ԿԱՊ, ռադիոկայանների ընդունիչ–հաղորդիչ (վերահաղորդիչ) շղթայով կազմված գծերով ռադիոկապ: Ռ. կ–ի գծերի կայանի ալեցիրները տեղադրվում են 70–100 *մ* բարձր–յան կայմերի (աշտարակների) վրա, հարևան կայանների ալեցիրները սովորաբար գտնվում են ուղիղ տեսանելիության (հարթավայրում՝ 40–50 *կմ*) սահմաններում: Ռ. կ–ի երկ. մինչև 10 000 *կմ* է, ծավալը՝ մինչև մի քանի հզ. կապուղի:

ՌԱԴԻՈՍՊԵԿՏՐԱԴԻՏՈՒՄ, ռադիոընդգրկույթի էլեկտրամագնիս. ալիքների՝ նյութի ատոմների, իոնների և մոլ–ների կլանման սպեկտրներով նյութի հետազոտման եղանակների համախումբ: Ռ–ման մեթոդներից են ԷՊՌ–ն, ՄՄՌ–ն, ցիկլոտրոն. ռեզոնանսը ևն:

ՌԱԴԻՈՍՊՈՐՏ, սպորտի տեխ. տեսակ, որտեղ հաստատվում է ռադիոսիրողական կապ, «աղվեսի որս» ռադիոծրագրի արագացված ընդունում–հաղորդում: Միջազգ. ռադիոսիրողների միությունը (IARU) հիմնադրվել է 1925–ին, ներառում է 140 երկիր (2016): Աշխարհի առաջնությունը՝ 1925–ից:

ՌԱԴԻՈՏԵԽՆԻԿԱ, 1. գիտ–յուն ռադիոընդգրկույթի (մինչև $6\cdot10^{12}$ *Հց*) էլեկտրամագնիս. տատանումների ու ալիքների, նրանց գեներացման, ուժեղացման, ճառագայթման, ընդունման եղանակների մասին: 2. Տեխնիկայի ճյուղ, որն իրականացնում է այդպիսի տատանումների և ալիքների կիրառությունը՝ ռադիոկապի, ռադիոհաղորդման, հեռուստատեսության, ռադիոնավագնացության և այլ տեղեկույթի հաղորդման համար: Ռադիոտեխ. եղանակներն ու սարքավորումները կիրառում են ավտոմատիկայում, հաշվող. տեխնիկայում, քիմիայում, ֆիզիկայում, աստղագիտ–յան, կենսբ–յան ու բժշկության մեջ և այլուր: Առանձնացնում են Ռ–ի մի շարք ենթաճյուղեր, որոնցից գլխավորներն են ռադիոալիքների գեներացումը, ուժեղացումը, էլ. տատանումների փոխակերպումը, ինչպես նաև ալեցիրային տեխնիկան, ռադիոալիքների տարածումը տարբեր միջավայրերում, հաղորդված ազդանշանների (ձայն., պատկեր., հեռագր. ևն) վերարտադրյունը, կառավարման տեխնիկան, կարգավորումն ու վերահսկողությունը ռադիոտեխ. եղանակներով:

ՌԱԴԻՈՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՆ, **ռադար** (անգլ.՝ radar – radio detecting and ranging – «ռադիոհայտնաբերում և հեռավորության որոշում»–ի համառոտագրությունը), ռադիոտեխ. եղանակներով տարբեր օբյեկտների հետևելու (դիտելու) սարքավորում: Հիմն. տարրերն են ալեցիր. համակարգը, հաղորդիչ–ընդունիչը՝ լուս. ցուցիչով և համակարգչով՝ ստացված ազդանշանները մշակելու համար: Լինում են գետնադիր, ծով., ինքնաթիռային, արբանյակային ևն, իմպուլս. և անընդհատ ճառագայթման, ռադիոալիքների տարբեր ընդգրկույթների (*մմ*–ից մինչև *մ*–ային), ըստ նպատակ. նշանակության (օր.՝ օդ. շարժումների կառավարման, հրանոթ. նշանառության ևն) Ռ. կ–ներ:

ՌԱԴԻՈՖԱՐՈՍ, հիմնականում գետնադիր ընդունիչ–հաղորդիչ ռադիոկայան՝ հայտնի աշխարհագր. տեղադիրքով, որի ազդանշաններն օգտագործվում են ինքնաթիռների, նավերի ննի տեղը որոշելու համար: Գործարկվում է ինքնաթիռի (նավի) կողեզրի ռադիոազդանշման կայանի ազդանշանների ազդեցությամբ, որոնցով որոշում են Ռ–ի ուղղությունն ու հեռ–յունը:

ՌԱԴԻՈՕՊՏԻԿԱԿԱՆ ԱՍՏՂԱԴԻՏԱԿ, **ՌՕՏ 54/2,6** կամ **Հերունու հայելային ռադիոհեռադիտակ**, աշխարհում առաջին Ռ. ա. է, կառուցել է ֆիզիկոս Պարիս *Հերունին* 1985–ին՝ Արագած լ–ան լանջին՝ Օրգով գ–ում (ՀՀ Արագածոտնի մարզ)՝ ծ.

մ. 1700 *մ* բարձր–յան վրա: Տրամագիծը՝ 54 *մ* (ռադիո) և 2,6 *մ* (օպտիկ. դիտակների), անկյուն. լուծունակությունը՝ 7″–25″, ալեհավաք. մակերևույթը՝ 804 *մ*², ալիքի երկ.՝ 1, 2, 3, 8 *սմ* և 3, 20 *սմ*: ԽՍՀՄ փլուզումից հետո չի գործում:

ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱ, *ֆիզիկայի* բաժին. ուսումնասիրում է ռադիոընդգրկույթի ալիքների և էլեկտրամագնիս. տատանումների հետ կապված երևույթները, նրանց գրգռումն ու տարածումը, ընդունումն ու հաճախության փոխակերպումը, ինչպես նաև վակուումում և նյութերում լիցքավորված մասնիկների հետ էլեկտրամագնիս. և էլ. դաշտերի փոխազդեցությունները: Հետազոտության ռադիոֆիզ. եղանակները լայնորեն կիրառվում են ֆիզիկայի տարբեր բաժիններում (օր.՝ օպտիկայում), իսկ որոշ բաժիններ առանձնացել են որպես ինքնուրույն գիտ–յուններ (օր.՝ ***ռադիոաստղագիտությունը, ռադիոսպեկտրադիտումը, քվանտային էլեկտրոնիկան*** ևն): 1960–ին հիմնադրվել է ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստ–ը, 1975–ին՝ ռադիոֆիզիկայի ֆակ.՝ ԵՊՀ–ում:

ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ԳՀԻ ՀՀ ԳԱԱ, կազմակերպվել է 1960–ին՝ Աշտարակում՝ *Բյուրականի աստղադիտարանի* ռադիոֆիզիկայի բաժնի հիման վրա՝ Վիկտոր *Համբարձումյանի* և Էմիլ *Միրզաբեկյանի* նախաձեռնությամբ: Գիտ. հետազոտությունների հիմն. ուղղություններն են ԳԲՀ–ների ռադիոֆիզիկան, քվանտ. ռադիոֆիզիկան, պինդ մարմնի ֆիզիկան, կիսահաղորդչ. էլեկտրոնիկան, տես. ֆիզիկան, գիտ. սարքաշինությունը: Ինստ–ում ստեղծվել են ԳԲՀ–ների ռադիոալիքների գերզգայուն ընդունիչներ (ռադիոմետրեր), ԳԲՀ քվանտ. ուժեղացուցիչներ (մազերներ), մշակվել են հեռավոր կապի անտենաների հարաչափերի որոշման ռադիոֆիզ. եղանակներ: Կատարվել են նաև բարձրջերմաստիճան. գերհաղորդիչների վերաբերյալ տես. և փորձարար. աշխ–ներ, պինդ մարմիններում կառուցվածք. արատների, ինչպես նաև ֆազ. անցումների հետազոտություններ: Տեսականորեն հետազոտել են կիսահաղորդչ. քվանտ. գեներատորների ստեղծման հնարավորությունները: Տնօրեններ՝ Էմիլ Միրզաբեկյան, Ռադիկ Սարտիրոսյան, Արսեն Հախումյան (2008–ից): Ինստ–ում է աշխատել նաև Անդրանիկ *Իոսիֆյանը*:

ՌԱԴԻՈՒՄ (Radium), Ra, տարրերի պարբեր. համակարգի II խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 88, ա. զ.՝ 226,0254, հողալկալիական մետաղ է: Ճառագայթաակտիվ է, առավել կայուն իզոտոպը՝ ^{226}Ra ($T_{1/2}$ = 1600 տարի): Անվանումը՝ լատ.՝ radius – ճառագայթ: Արծաթասպիտակավուն փայլուն մետաղ է, խտ.՝ 5,5–6,0 *գ/սմ*³, $t_{հալ.}$՝ 969°C: Քիմիապես ակտիվ է: Բնության մեջ հանդիպում է ուրանի հանքերում: Կիրառվում է բժշկության մեջ և տեխնիկայում: ^{226}Ra իզոտոպն օգտագործում են նեյտրոններ արձակող (բերիլիումի հետ) և լուսարձակող (ցինկի սուլֆիդի հետ) խառնուրդներ պատրաստելու համար:

ՌԱԴԼՈՎ (Radloff) Վասիլի Վասիլևիչ (Ֆրիդրիխ Վիլհելմ, 1837–1918), գերմանացի լեզվաբան, արևելագետ–թյուրքագետ, ազգագրագետ: ՌԳԱ ակադ. (1917, Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ.՝ 1884–ից): 1858–ից՝ Ռուսաստանում: Թյուրք. լեզուների պատմահամեմատ. ուսումնասիրության սկզբնավորողներից: Վերծանել է (Վ. Թոմսենի հետ միաժամանակ) օրխոնո–ենիսեյյան արձանագրությունները: Հեղինակ է «Թյուրքական բարբառների բառարանի փորձ» (1–24, 1888–1911) ուսումնասիրության:

ՌԱԴԿԼԻՖ ԲՐԱՈՒՆ (Radcliffe Brown) Ալֆրեդ Ռեջինալդ (1881–1955), անգլիացի մարդաբան և սոցիոլոգ: Սոցիալ. մարդաբանության, տես. ֆունկցիոնալիզմի հիմնադիրը:

ՌԱԴՀԱԿՐԻՇՆԱՆ Սարվապալի (1888–1975), հնդիկ փիլ., պետ., հաս. գործիչ, Հնդկաստանի նախագահ՝ 1962–67–ին (1952–62–ին՝ փոխնախագահ): Հեղինակ է փիլ. աշխ–ների:

ՌԱԴՈ (Radó) Շանդոր (1899–1981), հունգար քարտեզագիր և աշխարհագետ: Մասնակցել է Հունգարիայում 1919–ի հեղ. և ԵՀՊ–ի ժամանակ հակաֆաշիստ. շարժումներին (1936–44–ին ղեկավարել է «Դորա» հետախուզ. խումբը):

ՌԱԴՈՆԵՎ Իվան (1927–1994), բուլղար գրող: Հեղինակ է «Գարնանային լուսաբաց» (1953), «Մեկ սպիտակ թերթ» (1975) քնար. բանաստեղծությունների ժող–ների, Լայպցիգի 1933–ի դատավարության մասին «Կարմիրը և շագանակագույնը» (1972) փաստագր., «Մարդակեր կինը» (բեմ.՝ 1978) սատիր., «Գնդաձև կայծակ» (բեմ.՝ 1985) պիեսների:

ՌԱԴՈՒՄ (Radom), ք. Լեհաստանում, համանուն վոյեվոդության վարչ. կենտրոնը: Բն.՝ 220 հզ. (2013):

ՌԱԴՈՆ (Radon), Rn, տարրերի պարբեր. համակարգի VIII խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 86, ա. զ.՝ 222,0176, ազնիվ գազ է: Ճառագայթաակտիվ է, առավել կայուն իզոտոպը՝ ^{222}Rn ($T_{1/2}$ = 3,8 օր): Առաջանում է ռադիումի տրոհումից (այստեղից՝ անվանումը): Ռ. անգույն, անհոտ գազ է, խտ.՝ 9,81 *գ/սմ*³, $t_{եռ.}$՝ 62°C: Կիրառվում է գիտ. հետազոտություններում, մետաղագործության և բժշկության մեջ (տես *Ռադոնաբուժություն*):

ՌԱԴՈՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, ալֆա–բուժության մեթոդ, երբ ալֆա–ճառագայթների աղբյուրը ***ռադոն*** ռադիոակտիվ իներտ գազն է: Կիրառվում են ռադոն. լոգանքների, ռադոն. ջուրը խմելու, ռադոնով հարստացված օդը շնչելու, միկրոհոդնաների (գինեկոլոգ. և ստոմատոլոգ. հիվանդությունների ժամանակ), չոր օդառադոն. լոգանքների, ռադիոակտիվ վիրակապերի ձևով: ՀՀ–ում Ռ. կիրառում են Կուրորտաբանության և ֆիզ. բժշկության ինստ–ում:

ՌԱԴՈՒԼԱՎՈՎ Վասիլ (1854–1929), Բուլղարիայի վարչապետ՝ 1886–87 և 1913–18–ին: Լիբերալ կուս–յան հիմնադիր–առաջնորդներից (1887):

ՌԱԴՈՎՄԿԻ Վիտալի Պետրովիչ (1920–2001), Էներգ. մեքենաշինության ընագավառի ռուս. գիտնական: ՌԳԱ թղթ. անդամ (1987): Սոց. աշխ. հերոս (1976): Աշխ–ները վերաբերում են մեծ հզորության Էներգ. սարքավորումների ստեղծմանը: Լենինյան (1960), ԽՍՀՄ Պետ. (1985) մրց–ներ:

ՌԱԴՈՒ ՄԵԾ (Radu cel Mare, ծ. թ. անհտ–1508), Վալախիայի հոսպոդար՝ 1495–ից: Սկզբնավորել է (1508) գրատպությունը (որի համար արժանացել է «Մեծ» կոչման):

«ՌԱԴՈՒՈՒԳԱ» (ռուս. – «Ծիածան»), ԵԱԱ (ԽՍՀՄ, 1975–83)՝ հեռուստատես. ծրագրերի վերահաղորդման և կապի իրականացման համար: Ներառվել է «Մոլնիա–Օրբիտա» համակարգի մեջ:

ՌԱԵՎՄԿԻ Վլադիմիր Ֆեդոսեևիչ (1795–1872), դեկաբրիստ, բանաստեղծ, մայոր (1821): 1812–ի Հայրեն. պատերազմի և արտ. արշավանքների մասնակից: 1822–ին զինվորների շրջանում քարոզչության համար ձերբակալվել, աքսորվել է Իրկուտսկի նահգ (1827–56):

ՌԱԶԳՈՆ Լև Էմմանուիլովիչ (1908–1999), հրեա ռուսագիր գրող: 1938–55–ին՝ աքսորում: Հեղինակ է «Ոչ մտացածին» (1988) հուշագրության, «Գերի՝ իր հայրենիքում» (1994) հուշերի ժող–ի, «Նախանցյալ օրը և այսօր» (1995) ինքնակենսագր. վիպակի, նաև գրաքննադատ. ակնարկների:

ՌԱԶԳԲԱՏԼՅԱՆ Հերմինե Դանիելի (Սաշկա, 1926–1944), Բուլղարիայում հակաֆաշիստ. շարժման մասնակից, պարտիզան: 1943–ին ընդգրկվել է Սոֆիայից ոչ հեռու գործող «Չավդայ» պարտիզան. ջոկատում: Սատնությամբ ընկել է թշնամու ձեռքը: Երկար խոշտանգումներից հետո ֆաշիստները Ռ–ին կիսամեռ թաղել են:

ՌԱԶԻ, **ար–Ռազի** (լատ.՝ Rhazes), Աբու Բաքր Մուհամմեդ բեն Զաքարիա (865–925/ 934), պարսիկ ազատամիտ գիտնական–հանրագիտակ, բժիշկ, փիլ.: Ռ–ի 184 աշխ–ներից պահպանվել են 61–ը: Նկարագրել է կարմրուկ և ծաղիկ հիվանդությունները, ծաղիկի դեմ փորձել է պատվաստուկ: Հեղինակ է հակակղեր. տրակտատի, որը հավանաբար գրված է «Երեք խաբեբաներ» պամֆլետի հիման վրա:

ՌԱԶԻՆ Նիկոլայ Վասիլևիչ (1904–1983), ռուս հիդրոտեխնիկ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1968): Սոց. աշխ. հերոս (1958): Մասնակցել է Ցիմլյանսկի ջր. հանգույցի, Վոլգա ջրէկի և այլ հիդրոտեխ. կառույցների ստեղծմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1952):

ՌԱԶԻՆ Ստեպան Տիմոֆեևիչ (մոտ 1630–1671), Ռուսաստանում 1670–71–ի գյուղաց. պատերազմի առաջնորդ: Դոնի կազակ: 1662–63–ին, որպես Դոնի կազակների ատաման, արշավել է Ղրիմի թաթարների և թուրքերի դեմ: 1667–ի գարնանը Ռ. արշավանք է կազմակերպել դեպի Վոլգա և Յաիկ, 1668–69–ին՝ դեպի Կասպից ծով: 1670–ի արշավանքը Վոլգա վերածվել է հզոր գյուղաց. պատերազմի, որն ընդգրկել է Պովոլժիեն և երկրի մի շարք այլ շրջաններ: 1671–ի ապրիլին կազակ. ավազանին Ռ–ին մատնել է ցար. իշխանություններին: Մահապատժի է ենթարկվել Մոսկվայում:

ՌԱԶՄԱՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ, մի շարք երկրներում (ԱՄՆ, ԽՍՀՄ ևն) ԵՀՊ–ի ժամանակ ստեղծված և «սառը պատերազմի» ժամանակ ամրապնդված ռազմ. արդ–յան, բանակի և դրանց հետ կապված պետ. ապարատի ու գիտ–յան յուրատեսակ համալիր: «Ռ. հ.» եզրույթն 1–ին անգամ շրջանառության մեջ է դրել ԱՄՆ նախագահ Դ. Էյզենհաուերը 1961–ին:

ՌԱԶՄԱԴԵՐԻՆԵՐ (միջազգ. իրավունքում), պատերազմի ժամանակ թշնամու ձեռքն ընկած ԶՈՒ ներկայացուցիչներ (այդ թվում՝ պարտիզաններ, Դիմադրության շարժման մասնակիցներ, ռազմ. գործողություններին մասնակցած այլ անձինք): Ռազմ. գերության ռեժիմը կարգավորվում է Հաագայի 1899–ի և 1907–ի

(տես *Հաագայի համաձայնագրեր*) ու Ժնևի 1949-ի (տես *Ժնևի համաձայնագրեր 1949*) միջազգ. բազմակողմ համաձայնագրերով:

ՌԱԶՄԱԴԱՇՏԱՅԻՆ ԹԵՐԱՊԻԱ, բժշկագիտ-յան ճյուղ. ուսումնասիրում է զենքի ազդեցությունից և զինծառայողների աշխ-ի ու կենցաղի պայմանների առանձնահատկություններից առաջացող հիվանդագին կենսընթացների (ներքին օրգանների) առաջացման մեխանիզմները, կլինիկ. ընթացքը, բուժումն ու կանխարգելումը, մշակում և գործնականում ներդրում է բժշկ. տարհանման փուլերում հիվանդներին ու վիրավորներին ցուցաբերվող բուժօգնության կատարելագործման մեթոդները: Եզրույթն առաջարկել է Ե. Ի. *Մոիսեևը* 1940-ին: ՀՄՊ-ի տարիներին ռազմաճակատների բժիշկների փորձի հիման վրա մշակվել է նոր հայեցակարգ:

ՀՀ-ում Ռ. թ. դասավանդվում է ԵՊԲՀ-ում:

ՌԱԶՄԱԴԱՇՏԱՅԻՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, բժշկագիտ-յան ճյուղ. ուսումնասիրում է մարտ. վնասվածքները, դրանց կլինիկ. ընթացքը, մշակում մարտ. տարբեր պայմաններում հիվանդների և վիրավորների բուժման կազմակերպչ. հարցեր, մեթոդներ և եղանակներ: Ռ. վ-յան տես. հիմքը *վիրաբուժությունն* է և բժշկ. ծառայության մարտավարությունը: Ռ. վ-յան՝ որպես առանձին գիտ-յան, ձևավորմանը հիմնականում նպաստել է Ն. Ի. Պիրոգովը՝ իր «Ընդհանուր ռազմադաշտային վիրաբուժության սկզբունքները» (մաս 1–3, 1865–66) աշխ-յամբ: Հետագա զարգացմանը նպաստել է Ջ. Լիստերի առաջարկած՝ վերքերի բուժման հակաանեխության մեթոդը, վիրաբուժության, բակտերիաբանության, անանեխության և հականանեխության նվաճումների կիրառումը: Վ. Օպելի բուժման համակարգով վիրավորներին օգնություն էր ցուցաբերվում տարհանման փուլերում: Զենքի նոր տեսակների ի հայտ գալով՝ Ռ. վ-յան խնդիրները շարունակաբար փոխվում են, որոնց մշակմամբ ռազմադաշտ. վիրաբույժներն զբաղվում են խաղաղ ժամանակ:

ՌԱԶՄԱՆԱՎԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ, ռուս. ՌԾՆ-ի ԳՀ և մշակութալուսավոր. հաստատություն Ս. Պետերբուրգում: Հիմնադրել է Պետրոս I-ը 1709-ին՝ նավերի գծագրերը և մանրակերտները պահելու համար: 1805-ից՝ ծով. թանգարան: Մասնաճյուղերն են «Կրոնշտադտի ամրոցը», «Ավրորա» հածանավը, «Կյանքի ճանապարհը», «Չեսմենյան հաղթանակը», «Դ-2 սուզանավը»:

ՌԱԶՄԱՆԱՎԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄ (մի շարք երկրներում՝ **ռազմածովային ուժեր, ՌԾՈՒԺ**), ԶՈՒ-ի տեսակ, որը նախատեսվում է ծովերում և օվկ-ներում ռազմ. տարատեսակ խնդիրներ լուծելու համար: Կազմված են վերջոյա և սուզանավ. նավատորմերից, ծով. ավիացիայից և ափային (ծով., հետևակ-ափային, հրթիռա-հրետան. ևն) զորքերից:

ՌԱԶՄԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆԵՐ, բարձրագույն ռազմ. ուս. հաստատություններ, պատրաստում են բարձրակարգ սպայական, գիտամանկավարժ. կադրեր, կատարում ԳՀ աշխ.: Առաջին բարձրակարգ ռազմ. դպրոցները բացվել են Շվեդիայում, Գերմանիայում, Անգլիայում, Ֆրանսիայում XVIII դ-ի վերջ–XIX դ-ի սկզբին: Ռուսաստանում առաջին նմանատիպ հայտնի ուս. հաստատություններից էին Ս. Պետերբուրգի ռազմաբժշկ. (1798), ռազմաճարտարագիտ. (1819), ռազմ. (1820), ռազմածով. (1827) ակադ-ները, որոնք իրենց գործունեությունը շարունակել են խորհրդ. տարիներին, բացվել են նաև նորերը՝ Մոսկվայում՝ ԳԾ-ի (1918), ռազմաօդ. ճարտարագիտ. (1920), զրահատանկ. զորքերի (1932), քիմ. պաշտպ-յան (1932), ռազմաօդ. (1940), Ս. Պետերբուրգում՝ ռազմաքաղ. (1919), կապի (1932), ռազմահրետան. (1953), Խարկովում՝ հակաօդ. պաշտպ-յան ռազմաճարտարագիտ. ռադիոտեխ. (1941), Կալինինում՝ հակաօդ. պաշտպ-յան ռազմահրամ. (1956) և այլ Ռ. ա.: Հայ շատ անվանի ռազմ. գործիչներ խորհրդ. ռազմ. ուս. հաստատությունների շրջանավարտներ են:

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀՀ ՊՆ մարշալ Արմենակ Խանփերյանցի անվան, կազմավորվել է 2001-ին՝ 1994-ին հիմնադրված Երևանի ռազմ. ավիացիայի թռիչքատեխ. ուսումնարանի հիմքի վրա: 2016-ից՝ Ռ. ա. հ.: Պատրաստում է օդաչուներ, ղեկապետներ, թռչող սարքերի և դրանց շարժիչների, ավիացիոն ու ռադիոէլեկտրոն. սարքավորումների, ավիացիոն սպառազինության շահագործման տեխնիկներ, սպա-կապավորներ: Համալսարանի պետ՝ գեն-մայոր Դանիել Բալայան (1994-ից):

ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ուսումնասիրում է առողջապ-յան տես. և գործն. խնդիրները, ԶՈՒ-ի անձնակազմի մարտ. ախտահարումները և հիվանդությունների առաջացման ու ընթացքի առանձնահատկությունները, կազմակերպում է մարտ. գործողությունների ժամանակ բժշկ. ապահովումը և զորքի անձնակազմի բուժկանխարգելիչ սպասարկումը խաղաղ պայմաններում: Ռ. բ-յան զարգացման ընթացքում առանձնացվել են Ռ. բ-յան առանձին բնագավառներ՝ *ռազմադաշտային վիրաբուժություն*, *ռազմադաշտային թերապիա*, որոնք մշակում են ԶՈՒ-ի բժշկ. ապահովման տես. և գործն. հարցեր:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, պատերազմի ռազմավար. բնույթի, նրա կանխարգելման ուղիների, օրենքների, ԶՈՒ շին-յան ու պատերազմի նախապատրաստման, զինված պայքարի վարման եղանակների մասին գիտելիքների համակարգ: Ռ. գ. սերտորեն կապված է հասարակագիտ., բնագիտ. և տեխ. մի շարք գիտ-յունների հետ:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱՏԵՐԱԲԵՄ, որոշակի տարածք (նեռառյալ նաև ջր. և օդ. կից տարածքները), որի սահմաններում ծավալվում են երկրի ԶՈՒ-ի ընդհ. պատերազմ. պլանից բխող ռազմավար. գործողություններ: Ռ. գ. թ. ունի ռազմաքաղ., ռազմ., տնտ., ֆիզիկաաշխարհագր., ժողովրդագր. բնույթի բաղադրիչներ:

ՌԱԶՄԱԿԱՆ ԴՈԿՏՐԻՆԱ, քաղ. նպատակների հասնելու համար ռազմ. ուժի օգտագործման, ռազմ. խնդիրների բնույթի ու դրանց լուծման միջոցների, ռազմ. շին-յան հիմն. ուղղությունների վերաբերյալ պետության (պետությունների դաշնության) պաշտոնապես ընդունած հայացքների համակարգ: Ռ. դ. մշակում և իրականացնում է պետության քաղ. և ռազմ. ղեկավարությունը:

ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ, թղթադրամներ, որոնք որպես շրջանառության և վճարման պարտադիր միջոց թողարկում են պետությունները (պետությունների դաշինքները) նվաճված երկրի տարածքում:

ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ, հատուկ իրավ. կանոնակարգ երկրում կամ նրա առանձին մարզերում. հաստատում է պետության իշխանության բարձրագույն մարմինը *արտակարգ դրության* (պատերազմ, ապստամբություն, տարեր. աղետ ևն) դեպքում: Ռ. դ-յան բնորոշ հատկանիշներն են զինվ. իշխանությունների լիազորությունների ընդլայնումը, քաղաքաց. բնակչության լրացուցիչ պարտականությունների (աշխ. և այլ պարհակներ) սահմանումը, որոշակի սահմանափակումների (պարետ. ժամ, որոշակի վայրից հեռանալու կամ մուտք գործելու արգելք ևն) իրականացումը ևն: Զինվ. իշխանությունների կարգադրություններն չկատարողները ենթարկվում են քր. պատասխանատվության՝ պատերազմ. ժամանակաշրջանի օրենքներով: ՀՀ-ում Ռ. դ. մտցնելու կարգը սահմանված է «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքով (05.12.2006):

ՌԱԶՄԱԿԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ, 1. պետության տնտ-յան ճյուղ, որը լայն իմաստով ներառում է ռազմ. գործի բոլոր տնտ. հարցերը, ապահովում պետության պաշտպ. (ռազմ.) ներուժը: 2. Գիտ-յուն և ուս. առարկա. ուսումնասիրում են պետության մեջ ռազմ. գործի (պաշտպ-յան, շին-յան, ԶՈՒ-ի պահպանման ևն) տնտ. ապահովման օրինաչափությունները, ռազմագիտ-յան բաղկացուցիչ մաս է:

«ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻԶՄ», խորհրդ. պետության արտակարգ միջոցառումների համակարգ՝ տնտ. ճգնաժամի, քաղաքաց. պատերազմի և օտարերկրյա ինտերվենցիայի պայմաններում: Իրականացվել է 1918-ից՝ տնտ. ճգնաժամը հաղթահարելու և կոմունիզմ կառուցելու հնարավորության պատկերացումների վրա: 1921-ին փոխարինվել է նէպով:

ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան, կազմավորվել է 1998-ին՝ 1994-ին հիմնադրված ՀՀ ՊՆ բարձրագույն զինվ. հրամ. ուսումնարանի հիմքի վրա: 2016-ից՝ Ռ. հ.: Պատրաստում է սպայական կադրեր: 2004-ից Ռ. հ-ում գործում է Սպայական կադրերի որակավորման բարձրացման կենտրոնը: Համալսարանի պետեր՝ գեն-լեյտ-ներ Արշալույս Փայտյան, Ստեփան Միրզոյան, լեյտ. Գարեգին Գաբրիելյան, Մարտին Կարապետյան, գեն-մայոր Արմեն Ղահրամանյան (2015-ից):

ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՆՁԱԳՈՐԾՆԵՐ, խաղաղության (պատերազմի նախահարձակման պատրաստություն և հրահրում), մարդկության (սպանություն, սպանդ, աքսոր և բնակչության նկատմամբ այլ դաժանություններ) հանդեպ հանցագործությունների, ինչպես նաև ռազմ. հանցագործությունների կազմակերպիչներ, սադրիչներ և կատարողներ:

ՌԱԶՄԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ, մի պետության (պետությունների դաշինքի) ԶՈՒ խմբավորման՝ իր տարածքից դուրս մնալը՝ որոշակի ռազմաքաղ. նպատակներով: Տարբերում են Ռ. ն-յան գործընկերային (երկ- կամ բազմակողմ. պայմանագրի և համաձայնագրի հիմքով), նվաճողական, ռազմ. դիտորդների

ներկայության, խաղաղարար ուժերի Համաշխ. օվկ-ում ՌԾՈՒՒ պարեկման և այլ նպատակներով:

ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, քաղ. նպատակների հասնելու համար ռազմ. ուժի նախապատրաստմանն ու կիրառմանն ուղղված՝ պետության (պետությունների դաշինքի) և հաս-յան սոցիալ-քաղ. ինստ-ների գործունեությունը: Ռ. ք-յան հիմն. ուղղությունները, նպատակները, խնդիրներն ու միջոցները սահմանվում են օրենքներով, ազգ. անվտանգության հայեցակարգով, ռազմական դոկտրինայով, պետ. այլ փաստաթղթերով:

ՌԱԶՄԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐ Ռուսաստանում, իշխանության գրավման մարտ.՝ 1917–18-ին, և խորհրդ. իշխանության արտակարգ՝ 1918–28-ին մարմիններ: Ստեղծվել են բոլշևիկների նախաձեռնությամբ Պետրոգրադում, Մոսկվայում և այլ ք-ներում զինված ապստամբություն սկսելու համար: 1918–21-ին գործել են ավելի քան 30 հզ. հեղկոմներ:

ՌԱԶՄԱՃԱԿԱՏ, 1. զինված ուժերի բարձրագույն օպերատիվ-ռազմավար. միավորում, որ ստեղծվում է պատերազմի ժամանակ: Ռ-ի մեջ սովորաբար մտնում են մի շարք համազոր., տանկ., ավիացիոն բանակներ, տարբեր զորատեսակներից կազմված առանձին միավորումներ և զորամասեր, հատուկ զորքեր, ինչպես նաև թիկունքի օպերատիվ միավորումներ, զորամասեր, հիմնարկներ: 2. Շտակատ. ստորաբաժանումների ծավալման և թշնամու հետ համաչափման գիծը ռազմ. գործողությունների թատերաբեմում:

ՌԱԶՄԱՃԱԿԱՏԱՅԻՆ ԹԵՐԹԵՐ, ՀՄՊ-ի տարիներին հրատարակված պարբ-ներ, որոնք հիմնականում նույնատիպ ռուս. թերթերի հայ. տարբերակներն էին: Լույս են տեսել 16 անուն թերթեր (7-ը՝ ռազմաճակատների, մնացածները՝ դիվիզիաների պաշտոնաթերթեր) և 1 հանդես:

ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ Մոնթե Մելքոնյանի անվան, ՀՀ ՊՆ միջնակարգ մասնագիտ. ուս. հաստատություն: Ստեղծվել է 1994-ին՝ ՀՀ լուսավորության նախ-յան ռազմամարզ. գիշերօթիկ վարժարանի հիման վրա՝ ուս. զորամասի կարգավիճակով՝ ՀՀ ավագ դպրոցի (10–12-րդ դասարաններ) կրթ. ծրագրերով: 1997-ից ուսումնարանի կուրսանտ. զումարտակը մտցվել է ՀՀ ՊՆ բարձրագույն զինվ. հրամ. ուսումնարանի կազմի մեջ՝ որպես հետախուզ. ֆակ.: 2017-ից Ռ. վ-ի կազմում է նաև *«Փոքր Մհեր»* կրթահամալիրը: Վարժարանի պետեր՝ փոխգնդ. Ալեքսան Մինասյան, մայոր Սիրական Մինասյան, գնդ-ներ Արմեն Սարգսյան, Ռոլանդ Քելեշյան, Վիտալի Ոսկանյան (2007-ից):

ՌԱԶՄԱՆԱՎ, որևէ երկրի ՌԾՈՒ-ին պատկանող և բաց ծովի վերաբերյալ ժնևի 1958-ի միջազգ. և ՄԱԿ-ի ծով. իրավունքի մասին 1982-ի համաձայնագրով նախատեսված չափանիշներին համապատասխանող նավ: Ռ. պետք է ունենա պետ. պատկանելության արտաքին նշաններ, լինի տվյալ պետության մեջ ծառայող սպայի հրամանատարության տակ, ունենա կանոնավոր ռազմ. կարգապահությունը ենթարկվող անձնակազմ:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՋԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ, հիմնադրել է Բաֆֆի *Հովհաննիսյանը* 1994-ին: Հանդես է գալիս որպես երկրաքաղ. մտածողության ձևավորմանը և միջավայրի համապարփակ ընկալմանը նպաստող ուժ: Զբաղվում է նաև տարածաշրջ. անվտանգության ու համագործակցության, քաղաքաց. կրթության, պետության և ազգի համար վճռորոշ՝ ներքին ու արտաքին քաղ-յունների կիրառման հետազոտությամբ:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐԱԶԱԿՈՂԱԿԱՆ ՄՊԱՀԱԶԻՆՈՒԹՅՈՒՆԸ (ՌՀՄ) ԿՐՃԱՏԵԼՈՒ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ստորագրել են ԽՍՀՄ-ը և ԱՄՆ-ը 1991-ին Մոսկվայում: Պայմանագրով կողմերի հարձակվող. կրիչների (Միջմայրցամաք. և սուզանավերի բալիստիկ հրթիռներ, ռազմավար. ռմբակոծիչներ) ընդհ. թիվը կրճատվել է մինչև 1600-ի, միջուկ. լիցքերինը՝ մինչև 6000-ի: 1993-ին (ՌՀՄ-2) և 2010-ին (ՌՀՄ-3) կողմերի միջև կնքվել է նոր պայմանագիր, որոնք նախատեսել են կրիչների (մինչև 1550) և մարտագլխիկների (մինչև 3000–3500) հետագա կրճատում:

ՌԱԶՄԱՎԻՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ, Գլխ. Կովկաս. լ-շղթայով անցնող և Վլադիկավկազ ու Թբիլիսի ք-ները միացնող ճանապարհի պատմ. անվանումը: Երկ՝ 208 *կմ*: Կառուցել են ռուս. զորքերը, մշտ. հաղորդակցությունն սկսվել է 1799-ին:

ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՌՏԱՁԵՎԵՐ, մարզիկների ընդհ. ֆիզ. և տեխ. պատրաստությունը զուգակցող ռազմակիրառ. նշանակության մարզաձևերի (ավտո-մոտո, ռադիոսպորտ. հրաձգություն, ջրաշարժիչ., ստորջրյա ևն) հավաք. անվանումը:

ՌԱԶՄԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՊՈՏԵՆՑԻԱԼ, երկրի (երկրների դաշինքի) օբյեկտիվ հնարավորությունները, որոնք կարող են օգտագործվել նրա պաշտպ. հզորության ամրապնդման և պատերազմի վարման համար: Որոշվում է պետության սոցիալ-տնտ. և քաղ. կարգով, արտադր-յան ծավալով ու կառուցվածքով, արդ-յան (առաջին հերթին՝ ծանր և ռազմ.) արտադր. կարողությունների առկայությամբ, գղտ-յան զարգացմամբ, համապատասխան տրանսպորտ. միջոցների ու կապի առկայությամբ, բնակչության թվով ու բարոյաքաղ. մակարդակով, գիտ-յան ու տեխնիկայի զարգացման աստիճանով ևն:

ՌԱԶՄԱՏՈՒԳԱՆՔ, կոնտրիբուցիա (լատ.՝ contributio), 1. գումար, որը պարտված պետությունը հաշտության պայմանագրով վճարում է հաղթողին: 2. Դրամ. հարկադիր տուրք, որը թշնամի զորքերը գանձում են բռնագրավված տարածքի բնակչությունից: Երկու դեպքում էլ նպատակը ռազմ. կողոպուտն է:

ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ (ՌԱՀ), ռազմ. արդ-յան, բանակի և նրանց կառավարող պետ. ապարատի ու համապատասխան գիտ-յան ամբողջությունը՝ տարբեր երկրներում (ԱՄՆ, ՌԴ ևն) ձևավորված ու «սառը պատերազմի» ժամանակաշրջանում ամրապնդված անվանումը (առաջարկել է Դ. *Էյզենհաուերը*): ՌԱՀ-ի մասշտաբները և արտաքին ու ներքին քաղ-յան վրա ազդեցությունը տվյալ երկրի ռազմականացման աստիճանի արտահայտությունն է:

ՌԱԶՄԱՕԴԱՅԻՆ ՈՒԺԵՐ (ՌՕՈՒ), ՋՈՒ տեսակ. նախատեսված է հակառակորդի օդատիեզ. ագրեսիան հետ մղելու և վերգետնյա տարատեսակ օբյեկտներ ու զորքերի խմբավորումներ օդ. հարձակումներից պաշտպանելու, ինչպես նաև թշնամու օբյեկտներն ու զորքը ոչնչացնելու համար: Առաջին ռազմ. ինքնաթիռները երևան են եկել 1909–10-ին: Աշխարհի առաջատար պետությունների ՌՕՈՒ կազմված են ռազմավար., մարտավար., ռազմատրանսպորտ. և ՀՕՊ-ի ավիացիաներից: ՀՀ ՌՕՈՒ ունեն 2 մասնագիտացված հենակետեր՝ Գյումրիում և Երևանում՝ սպառազինված գրոհիչներով, կործանիչ-կալանիչներով, ուս. ինքնաթիռներով, փոխադր. և ուղևորատար ինքնաթիռներով, ուղղաթիռներով, ՀՕՊ-ը՝ հեռահար գործողության զենիթահրթիռ. համալիրով:

«ՌԱԶՄԻԿ», ազգ., քաղ. պարբերաթերթ (1937–44, Պլովդիվ, ապա՝ Սոֆիա): Ցեղակրոն-տարրն. շարժման պաշտոնաթերթ: Հիմնադիրներ՝ Գարեգին Նժդեհ, Հայկ Աատրյան, Ներսես Աատվածատրյան:

«ՌԱԶՄԻԿ», հաս-քաղ., երիտասարդ. պարբերաթերթ (1983-ից, Բեյրութ): ՀՅԴ Լիբանանի երիտասարդ. միության պաշտոնաթերթ:

ՌԱԶՈՒՄՈՎՍԿԻ Կիրիլ Գրիգորևիչ (1728–1803), կոմս (1744), Ուկրաինայի վերջին հետմանը (1750–64), գեն-ֆլդմ. (1764): 1746–98-ին՝ Ս. Պետերբուրգի ԳԱ նախագահ:

ՌԱԶՈՒՎԱԵՎ Գրիգորի Ալեքսեևիչ (1895–1989), ռուս. քիմիկոս-օրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1966): Սոց. աշխ. հերոս (1969): Աշխ-ները վերաբերում են մետաղօրգ. միացությունների, օրգ. գերօքսիդների, ռադիկալ. ռեակցիաների քիմիային: Լենինյան (1958), ԽՍՀՄ Պետ. (1971, 1985) մրց-ներ: 1934–42-ին անհիմն բռնադատվել է:

ՌԱԽԻՏ (հուն.՝ rhachia – մեջք, ողնաշար), **անգլիական հիվանդություն**, երեխաների (առավելապես՝ վաղմանկ. տարիքի) հիվանդություն. բնորոշվում է ֆոսֆորակալցիում. փոխանակության խանգարմամբ՝ պայմանավորված օրգանիզմում D վիտամինի անբավարարությամբ: Հիվանդանում են նաև կենդանիները:

ՌԱԽՄԱՆԻՆՈՎ, Իվան Գերասիմովիչ (մոտ 1755–1807), ռուս հրտ., թարգմանիչ, լուսավորիչ: 1788-ին տպարան է հիմնադրել Ս. Պետերբուրգում, 1791-ին տեղափոխել է Կազինկա գ. և սկսել Վոլտերի «ԵԼԺ»-ի հրատարակումը. տպագրել է 3 հատոր, ապա տպարանը փակել են:

ՌԱԽՄԱՆԻՆՈՎ, Սերգեյ Վասիլևիչ (1873–1943), ռուս կոմպոզիտոր, դաշնակահար, դիրիժոր: 1904–06-ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի դիրիժոր: 1918-ից՝ հիմնականում ԱՄՆ-ում: Գործերում առանձնանում է հայրենիքի թեման («Սիմֆոնիկ պարեր», 1940, ևն): Հեղինակ է նաև «Ալեկո» (1892), «Ժլատ ասպետը», «Ֆրանչեսկա դա Ռիմինի» (երկուսն էլ՝ 1904) օպերաների, սիմֆոնիաների (1895–1936), կոնցերտների, «Ռապսոդիա՝ Պագանինիի թեմաներով» (դաշնամուրի և նվագախմբի համար, 1934) երկի, դաշնամուր. պրելյուդների, «Էտյուդ-պատկերներ»-ի, «Ժայռ» (1893) սիմֆ. ֆանտազիայի, «Մեռյալների կղզին» (1909) սիմֆ. պոեմի, «Գարուն» (1902) կանտատի, «Զանգեր» (1913) վոկալ-սիմֆ. պոեմի, ռոմանսների և այլ գործերի:

ՌԱԽՄՈՆ (մինչև 2007-ը՝ Ռախմոնով) Էմոմալի (Իմոմալի) Շարիպովիչ (ծ. 1952),

1994–ից՝ Տաջիկստանի Հանրապետության նախագահ: 1992–93-ին՝ Տաջիկստանի Հանրապետության ԳԽ նախագահ:

ՌԱԿԻՏԱ Մարկ Սեմյոնովիչ (ծ. 1938), ռուս. սուսերամարտիկ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1964), վ. մ. (1979): Թիմ. առաջնությունում օլիմպ. խաղերի կրկնակի (1964, 1968), աշխարհի բազմակի (1967՝ անհատ., 1965, 1967, 1969–71՝ թիմ.) չեմպիոն: ԽՍՀՄ հավաքականի մարզիչ (1976–80):

ՌԱԿՀԱՅՆ, Արականյան լեռներ, Միանմայի հվ–արմ–ում: Երկ.՝ շուրջ 800 *կմ*, բարձր.՝ 3053 *մ* (Վիկտորիա լ.): Կազմված է սուր կատարներով և զառիթափ լանջերով, զուգահեռականների և միջօրեականների ուղղությամբ ձգվող լ–շղթաներից:

ՌԱԿՈՎ Վասիլի Իվանովիչ (1909–1996), ռուս. օդաչու: ԽՄ հերոս (1940, 1944), ավիացիայի գեն–մայոր (1958): Մասնակցել է Խորհրդա–ֆինն. պատերազմին, ՀՄՊ–ի ժամանակ գնդի հրամ.՝ Սևծով. և Բալթյան նավատորմերի գրոհիչ ավիացիայում: Կատարել է 170 մարտ. թռիչք, խորտակել է հակառակորդի 12 նավ:

ՌԱԿՈՎՍԿԻ Գեորգի Ստոյկով (1821–1867), բուլղար հեղ., գրող: 1861–62-ին Բելգրադում կազմակերպել է 1-ին Բուլղ. լեգիան (զորամիավորում): 1866–67-ին միավորել է չետնիկ վոյեվոդաներին՝ օսմ. լծի դեմ պայքարելու նպատակով: Առաջ է քաշել ազատագր. պայքարում բալկան. ժողդ–ների եղբայր. համերաշխության գաղափարը:

ՌԱՀԻՄ Մամեդ (Մամեդ Ռահիմ Աբբաս օղլի Հուսեյնով, 1907–1977), բանաստեղծ: Ադրբ. ԽՍՀ ժող. բանաստեղծ (1964): Հեղինակ է բանաստեղծությունների ժող–ների, «Լենինգրադի վրա» (1948, հայ.՝ 1950), «Կասպիականի վրա» (1958) պոեմների, նաև «Սայաթ–Նովա» (1956) և այլ պիեսների: Թարգմանել է Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի և ուր. գործերից: Հայ. հրատարակվել են նաև «Հայրենի եզերք» (1954), «Բանաստեղծություններ» (1964) ժող–ները: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949):

ՌԱՀԻՄԲԱԵՎ Աբդուլլո Ռահիմբաևիչ (1896–1938), ուզբեկ պետ. և կուս. գործիչ: 1920–ից՝ Թուրքեստանի ԻԽՍՀ ԿԳԿ նախագահ և կոմկուսի ԿԿ պատասխանատու, 1923–ին՝ Բուխարայի կոմկուսի 1-ին քարտուղար, 1933–37–ին՝ Տաջ. ԽՍՀ ժողկոմխորհի նախագահ: Բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ՌԱՀԻՄՈՎ Նաբի (1911–1994), ուզբեկ դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1964): 1929–ից՝ Տաշքենդի Հ. Ն. Համզայի անվ. ուզբ. թատրոնի դերասան (Յագո, Լիր արքա՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», «Լիր արքա», Խլեստակով՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1977):

«ՌԱՀՎԻՐԱ», մանկավարժ. ամսաթերթ (1906–08, Շումեն, ապա՝ Պլովդիվ): Բուլղարահայ ուսուցչ. միության պաշտոնաթերթ: Խմբ–ներ՝ Վարազդատ Տաքեսյան, Սամթեոս Երիցյան:

ՌԱՋԻՆԱ (Radzina) Էլզա (1917–2005), լատիշ դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1976): 1954–ից՝ Ա. Ուպիտի անվ. լատվ. դրամատիկ. թատրոնի (1988–ից՝ Լատվիայի Ազգ. թատրոն) դերասանուհի: Նկարահանվել է կինոյում («Համլետ», «Լիր արքա», «Թատրոն», հեռուստաֆիլմ, ևն):

ՌԱՋԻՆՍԿԻ (Radzinski) Էդվարդ Ստանիսլավովիչ (ծ. 1936), լեհ ռուսագիր դրամատուրգ: Հեղինակ է «104 էջ սիրո մասին» (1964), «Մեր Դեկամերոնը» (1988) ժամանակակից, «Զրույցներ Սոկրատեսի հետ» (1975), «Ներոնի և Սենեկայի ժամանակների թատրոնը» (1982) պատմ. թեմաներով պիեսների, Նիկոլայ II–ի, Ալեքսանդր II–ի, Ի. Վ. Ստալինի և ուր. մասին պատմահրապարակախոս. երկերի, «Նապոլեոն. Կյանք մահից հետո» (2002) վեպի, նաև հեռուստապատումների և այլ գործերի:

ՌԱՄԱԴԱՆ, *ռամազան*, մահմեդ. լուսն. օրացույցի 9–րդ՝ պահքի ամիսը (ուռազա): Ռ–ի 27–ին մահմեդականները տոնում են Հզորության գիշերը (լեյլաթ ալ– քադար)՝ ***Մուհամմեդ*** մարգարեին Ղուրանի ընծայման մեկնարկի տոնակատարությունը:

ՌԱՄԱԴԻԵ (Ramadier) Պոլ (1888–1961), ֆրանսիայի վարչապետ՝ 1947–ից, Սոց. կուս–յան գործիչ: 1947–ի մայիսին կառյունից հեռացրել է կոմունիստ նախարարներին:

ՌԱՄԱԼՅՈՒ Էանիշ (Ramalho Eanes) Անտոնիու դուշ Սանտուշ (ծ. 1935), պորտուգալացի գեն. (1975): 1976–86–ին՝ Պորտուգալիայի նախագահ, 1976–81–ին՝ ԶՈՒ ԳԾ պետ, 1976–82–ին՝ հեղ. խորհրդի նախագահ:

ՌԱՄԱԿՐԻՇՆԱ (Գադահար Չատոպատհյայ, Չաթերջի, 1836–1886), հնդիկ կրոն. մտածող, քարոզիչ և հաս. գործիչ: Քարոզել է բոլոր կրոնների հոգևոր նմանություն: Ըստ Ռ–ի՝ կրոն. բարոյագիտ–յան գլխավոր պահանջն աշխարհից ոչ թե հրաժարումն է, այլ սեփական պարտականությունների կատարումը:

ՌԱՄԱԿՐԻՇՆԱՆ Վենկատրաման (Ramakrishnan Venkatraman, ծ. 1952), բրիտանացի հնդիկ կենսաքիմիկոս: 2015–ից՝ Թագավոր. ընկ–յան նախագահ: Աշխ–ները վերաբերում են ռիբոսոմների կենսաքիմիային, բացահայտել է ռիբոսոմների կառուցվածքն ու ֆունկցիաները:

Նոբելյան մրց. (2009, Ա. *Յոնապի* և Թ. *Սթեյցի* հետ):

«ՌԱՄԱՅԱՆԱ», հինհնդեվրոպ. էպիկ. պոեմ սանսկրիտով, վերագրվում է առասպել. բանաստեղծ Վալմիկիին: Ենթադրվում է, որ ստեղծվել է մ. թ. ա. մոտ IV դ–ում Արլ. Հնդկաստանում: Նվիրված է բարերար արքա–հերոսի՝ Ռամայի սխրանքներին: «Ռ.»–ի հիմքում պատմ. իրադարձություններ են (արիացիների վաղ շրջանի առաջխաղացումը դեպի Հվ. Հնդկաստան, ռազմ. գործողությունները): «Ռ.» եղել է ներշնչման թեմա Հնդկաստանի և այլ երկրների գր. բազմաթիվ ստեղծագործությունների համար:

ՌԱՄԱՆ Չանդրասեկհարա Վենկատա (1888–1970), հնդիկ ֆիզիկոս, գիտ. դպրոցի հիմնադիր: Հնդ. ԳԱ ակադ. և նախագահ (1934–ից), ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1947): Աշխ–ները վերաբերում են օպտիկային, մոլ. ֆիզիկային և բյուրեղաֆիզիկային: Բացահայտել է (1928, Կ. Ս. Կրիշնան՝ Գ. Ս. Լանդսբերգի ու Լ. Ի. Մանդելշտամի հետ միաժամանակ) ***լույսի համակցական ցրումը***, որը կոչվել է Ռ–ի էֆեկտ:

ՌԱՄԱՆՈՒՋԱ, XI–XII դդ–ի հնդիկ փիլ., նիշիշտա–ադվայտայի հիմնադիրը, բնորոշ է սահմանափակ մոնիզմը: Բրահմանի գոյության հետ մեկտեղ Ռ. ընդունում է նաև փորձն. աշխարհի և անհատ. հոգիների գոյությունը: Ռ–ի հայեցակարգը հիմք է հանդիսացել ***բհակտիի*** բազմաթիվ ուսմունքների համար:

ՌԱՄԱՊԻՏԵԿ (Ռամա – հնդ. դյուցազներգության գլխ. հերոսի անունը և pithekos – կապիկ), բրածո մարդանմման կապիկ (12–14 մլն տարի առաջ): Ոսկր. մնացորդները գտնվել են Հվ. Ասիայում, Արլ. Աֆրիկայում, Եվրոպայում: Հավանաբար մարդու էվոլյուցիոն զարգացման ճյուղին չի պատկանել:

ՌԱՄԱՅԻՆԻ (Ramazzini) Բեռնարդինո (1633–1714), իտալացի բժիշկ: «Արհեստավորների հիվանդություններ» (1700) աշխ–յան մեջ կանոնակարգել է աշխ–ի հիգիենայի և մասնագիտ. հիվանդությունների (մոտ 70) հարցերը:

ՌԱՄԲԵՐ (Rambert) Մարի (Մարիամ Ռամբերգ, Ramberg, 1888–1982), բալետի անգլիացի արտիստուհի, բալետմայստեր: Անգլ. բալետի հիմնադիրներից: 1926-ին ստեղծել է բալետի խումբ (1935–ից՝ «Բալլե Ռամբեր»), պատրաստել մի շարք աչքի ընկնող պարողներ:

ՌԱՄԲՈՒՅԵ (Rambouillet), ք. Ֆրանսիայում՝ Փարիզից 45 *կմ* հվ–արմ.: Բն.՝ 28 հզ. (2010): Ֆրանսիայի նախագահների ամառ. նստավայրն է: Հայտնի է Արքայական դղյակը (1375–ից, վերակառուցվել է XVI–XIX դդ–ում):

ՌԱՄԳՈՒԼԱՄ (Ramgoolam) Սիվուսագուր (1900–1985), Մավրիկիայի վարչապետ՝ 1965–82–ին, 1983–ի դեկտ–ից՝ գեն–նահանգապետ: 1949–82–ին՝ Լեյբորիստ. կուս–յան առաջնորդ:

ՌԱՄԵՆՍԿԻ Լեոնտի Գրիգորևիչ (1884–1953), ռուս. բուսաբան և աշխարհագետ, կենդանաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1935): Աշակել է բուսաշխարհագրության քանակ. մեթոդները:

ՌԱՄՋԵՅ, Ռեմզի (Ramsay), Ալլան (1686–1758), շոտլանդացի բանաստեղծ: Հեղինակ է «Քնքուշ փոքրիկ հովիվը» (1725) դրամատիկ. հովվերգության, «Երեսուն առակ» (1730) ժող–ի: Հրատարակել է անգլ. և շոտլանդ. ժող. բանաստեղծությունների «Մշտադալար բույսեր» (1724), «Խառնուրդ թեյասեղանի համար» (1724–27) ժող–ները:

ՌԱՄՋԵՅ, Ռեմզի, Նորման Ֆոստեր (1915–2012), ամերիկացի ֆիզիկոս: Հիմն. աշխ–ները վերաբերում են ռադիոսպեկտրադիտմանը, տարր. մասնիկների ֆիզիկային, մոլ. փնջերին, ատոմ. բնութագրերի ճշգրիտ չափումներին: Նոբելյան մրց. (1989):

ՌԱՄՋԱՅ, Ռեմզի, Ուիլյամ (1852–1916), անգլիացի քիմիկոս և ֆիզիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. (1901) և պատվ. (1913) անդամ: Բացահայտել է իներտ գազեր արգոնը (1894, Ջ. Ռեյլեյի հետ), կրիպտոնը, քսենոնը և նեոնը (1898, անգլ. քիմիկոս Մ. Տրավերսի հետ): Անջատել է հելիումը (1895): Նոբելյան մրց. (1904):

ՌԱՄՋԵՍ II, Եգիպտոսի XIX հարստության փարավոն՝ մ. թ. ա. 1290–24-ին: Սեթի I–ի որդին: Նրա օրոք Եգիպտոսը հասել է մեծ հզորության: Երկարատև պայքար է մղել խեթերի դեմ: Մ. թ. ա. 1258-ին նրանց հետ կնքած պայմանագրով Եգիպտոսին են անցել Պաղեստինը, Հվ. Ասորիքը, Փյունիկիան: Ռ. II նստավայրը Թեբեից տեղափոխել է Փեր Ռամզես («Ռամզեսի տուն», հետագայում՝ Տանիս) ք.: Կառուցել է տաճարներ Աբիդոսում, Թեբեում, տաճարներին կից շինություններ՝ Կառնակում և Լուքսորում, անձավ. տաճարներ՝ Աբու Սիմբելում ևն:

ՌԱՄԶԵՍ III, Եգիպտոսի XX հարստության փարավոն՝ մ. թ. ա. 1186–55-ին: Ր. III հետ է մղել Ստորին Եգիպտոսի վրա հարձակված «ծովի ժողովուրդներին»: Կառուցել է հոգեհանգստյան տաճար Մադինետ Աբուում (Թեբեի մոտ): Սպանվել է պալատ. հեղաշրջման ժամանակ:

ՌԱՄԶԵՍ IV, Եգիպտոսի փարավոն XX հարստությունից. իշխել է մ. թ. ա. մոտ 1156–50-ին: *Ռամզես III*-ի և հավանաբար Թիթի թագուհու որդին է: Զգտել է կառավարել նոր պատվիրաններով, բայց նկատելի արդյունքի չի հասել:

ՌԱՄԶԵՄՆԵՐ, Եգիպտոսի փարավոններ՝ XIX և XX հարստություններից: Ր-ի իշխանավարման շրջանում տեղի է ունեցել ժողդ-ների զգալի միգրացիա դեպի կենտր. միջերկրածով. շրջաններ: Վերջին հզոր թագավորը Ր. III-ն էր: Իսկ հարստությունն ավարտվել է Ր. XI-ի մահվամբ՝ մ. թ. ա. մոտ 1075-ին:

ՌԱՄԶԻՆ Լեոնիդ Կոնստանտինովիչ (1887–1948), ռուս ջերմատեխնիկ: ԳՈԷԼՌՈ-ի պլանի մշակման մասնակից: Համամիութ. ջերմատեխ. ինստ-ի հիմնադիր-տնօրեն (1921–30): 1930-ին բռնադատվել է: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943):

ՌԱՄԻ (Roehneria), եղինջազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի կամ կիսաթփերի ցեղ: Հայտնի է մոտ 100 տեսակ՝ առավելապես արևադարձ. գոտիներում: Հայրենիքը Չինաստանն է: Թել ստանալու համար մշակվում է 1 տեսակ՝ սպիտակը կամ չին. եղինջը: Օգտագործվում է մանածագործության և կոշիկի արդ-յան մեջ, ձկնորս. ցանցերի, գործիքների, նաև բարձրորակ թղթի արտադր-յան համար:

ՌԱՄԻԿՆԵՐ (պիլ.՝ ram – հոտ, ժողովուրդ բառից), անմիջ. արտադրողների հիմն. զանգվածը միջնադար. Հայաստանում: Վաղ ավատատիրության ժամանակաշրջանում Ր. են կոչվել անձնապես ազատ, պետ. հարկեր վճարող գյուղ. և քաղաք. բնակչության ոչ արտոնյալ խավերը (տես *Ազատներ*): Այդ ժամանակաշրջանում Ր. եղել են զինապարտ: XII–XIII դդ-ում Ր. են կոչվել անձն. ազատությունը պահպանած քաղաք. բնակչության ստորին խավերը: Հետագա դարերում Ր. եզրույթն օգտագործվել է «հասարակ ժողովուրդ» իմաստով:

ՌԱՄԻՇՎԻԼԻ Նինո Շալվայի (1910–2000), բալետի վրացի արտիստուհի, բալետմայստեր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1963): Սոց. աշխ. հերոս (1990): Վրաստանի ժող. պարի անսամբլի հիմնադիրը (1945) և գեղ. ղեկ-ը (Ր. *Մոսիշվիլու* հետ): 1927–36-ին՝ Թբիլիսիի ՕԲԹ-ի, 1936–45-ին՝ Վրաց. ֆիլհարմոնիայի ժող. պարի անսամբլի մենապարուհի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949):

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՌԱԿ), հիմնադրել են Սփյուռքում գործող *Սահմանադիր ռամկավար կուսակցության*, Ազատական (*Վերակազմյալ հնչակյաններ*) կուս-յան և *Հայ ժողովրդական կուսակցության* միավորումով 1921-ի հոկտ. 1-ին Կ. Պոլսում: Հիմն. նպատակը Հայկ. հարցի լուծումն էր, Արմ. Հայաստանի ազատագրումը և միացյալ անկախ Հայաստանի ստեղծումը: Գործել է սփյուռքահայ գաղութներում: ՀՀ-ում 1991–2012-ը գործել է Հայաստանի ՌԱԿ-ը, որը 2012-ին միավորվել է 2009-ին նրանից բաժանված Արմենական-ՌԱԿ-ի հետ՝ ՌԱԿ (Հայաստան) կուս-յան մեջ:

ՌԱՄՈ (Rameau) Ժան Ֆիլիպ (1683–1764), ֆրանսիացի կոմպոզիտոր, երաժշտության տեսաբան: Նպաստել է դաս. երաժշտ. ոճի բյուրեղացմանը, նախապատրաստել Ք. Վ. *Գլյուկի* օպեր. բարեփոխումը: Հեղինակ է «Իպպոլիտ և Արիսիա» (1733), «Կաստոր և Պոլլուքս» (1737) քնար. ողբերգությունների, «Բարեկիրթ Հնդկաստաններ» (1735) օպերա-բալետի, կլավեսինի համար պիեսների և այլ գործերի, «Տրակտատ հարմոնիայի մասին» (1722) աշխ-յան:

ՌԱՄՈՆ Ի ԿԱՀԱԼ (Ramón y Cajal) Սանտյագո (1852–1934), իսպանացի հյուսվածաբան: Հեղինակ է նեյրոնի՝ որպես նյարդ. համակարգի ձևաբան. միավորի մասին տեսության (1894): Դաս. աշխ-ները վերաբերում են աչքի ցանցաթաղանթի, ողնուղեղի, ուղեղիկի կառուցվածքին, վնասումից հետո նյարդի վերականգնմանը: Նոբելյան մրց. (1906, Կ. *Գոլջիի* հետ):

ՌԱՄՈՍ (Ramos) Ֆիդել Վալդես (ծ. 1928), Ֆիլիպինների նախագահ՝ 1992–98-ին: Գեն.: 1988–91-ին՝ ազգ. պաշտպ-յան նախարար:

ՌԱՄՈՒՏ ՌՈԶԱ (Ramos Roza) Անտոնիու (1924–2013), պորտուգալացի բանաստեղծ: Հեղինակ է «Խոսք և տարածություն» (1977), «Զգողություն» (1983), «Ջրային ժամացույց» (1993) բանաստեղծությունների, «Երկնագույն պատ» (1991) էսսեների ժող-ների:

ՌԱՆ Ռամմոհան (1772/74–1833), հնդիկ լուսավորիչ: Մշակել է կրոնափիլ. նոր համակարգ, որով հաստատում է բոլոր մարդկանց հավասարության դրույթը: Արդի բենզալ. արձակի հիմնադիրն է:

ՌԱՆԶՄԱՆ Յուլի Յակովլևիչ (1903–1994), ռուս. կինոռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1964): Սոց. աշխ. հերոս (1973): Նկարահանել է «Վերջին գիշերը» (1937), «Մաշենկա» (1942), «Կոմունիստ» (1958), «Քո ժամանակակիցը» (1968), «Տարօրինակ կինը» (1978), «Անձնական կյանք» (1982), «Ցանկությունների ժամանակը» (1984) և այլ ֆիլմեր:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1943, 1946-ին՝ կրկնակի, 1950, 1952, 1983):

ՌԱՅԹ (Wright), ամերիկացի ավիակոնստրուկտոր-օդաչու եղբայրներ: **Ուիլբեր Ր.** (1867–1912) և **Օրվիլ Ր.** (1871–1948): 1903-ին աշխարհում 1-իննն իրենց կառուցած բենզինի. մխոցաշարժիչավոր ինքնաթիռով թռել են 260 *մ* հեռ.:

ՌԱՅԹ Ռիչարդ (1908–1960), ամերիկացի գրող: Հեղինակ է սևամորթի ճակատագրի մասին «Ամերիկայի որդին» (1940), «Օտարը» (1953), «Տևական քուն» (1958) վեպերի, «Մարդը, որն ապրում էր գետնի տակ» (1943) վիպակի:

ՌԱՅԹ Սյուալ (1889–1988), ամերիկացի գենետիկ: Աշխ-ները վերաբերում են էվոլյուցիոն գենետիկային, կենսաչափությանը: Ժամանակակից պոպուլյացիոն գենետիկայի մաթ. ապարատի հիմնադիրներից է (Ս. Ս. Չետվերիկովի, Ռ. Է. Ֆիշերի, Ջ. Բ. Ս. Հոլդեյնի հետ):

ՌԱՅԹ Ֆրենկ Լլոյդ (1879–1959), ամերիկացի ճարտ., ճարտ-յան տեսաբան: Օրգ. ճարտ-յան հիմնադիրը: Ընդունել է որպես միասն. օրգանիզմ ազատ զարգացող տարածության հետ՝ պայմանավորված բնական միջավայրով: Կառույցներից են «Տունը ջրվեժի մոտ» (1936, Փենսիլվանիա), Ս. Գուգենհեյմի թանգարանը Նյու Յորքում (1956–59, ևն):

ՌԱՅԻՉԻՉ (Rajitic) Ստանոյլո (1910–2000), սերբ կոմպոզիտոր: Սերբիայի գիտ-յունների և արվ-ի ակադ-ի անդամ (1958): Հեղինակ է «Սիմոնիդա» (1956), «Խելագարի նոթերը» (1974) օպերաների, նաև բալետների, սիմֆոնիաների, սիմֆ. պոեմների և այլ երկերի:

ՌԱՅԼ (Ryle) Մարտին (1918–1984), անգլիացի ռադիոաստղագետ: ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1971): Առաջարկել է ապերտուր. սինթեզի եղանակ, հետազոտել գալակտիկաների ռադիոկառուցվածքը, չափումներում կիրառել է ռադիոաստղագիտ-յան մեթոդներ: Ր-ի ղեկավարությամբ կազմվել են տիեզ. ռադիոաղբյուրների կատալոգներ:

Նոբելյան մրց. (1974, Է. *Հյուիշի* հետ):

ՌԱՅԽ (Reich) Ջինաիդա Նիկոլաևնա (1894–1939), ռուս. դերասանուհի (ծագումով՝ գերմանացի): Ս. Ա. *Եսենինի* (1917–21), Վ. Է. *Մեյերհոլդի* (1922-ից) կինը: 1923–38-ին խաղացել է Սոսկվայում՝ Վ. Մեյերհոլդի ղեկավարած թատրոնում (Ակսյուշա՝ Ա. Ն. Օստրովսկու «Անտառ», Վարկա՝ Ն. Ր. Էրդմանի «Մանդատ», Անկա Անդրեևնա՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», Մարգարիտ Գոթիե՝ Ա. Դյումա-որդու «Կամելիազարդ տիկինը», ևն): Սպանվել է չբացահայտված հանգամանքներում:

ՌԱՅԽ Վիլհելմ (1897–1957), հրեա բժիշկ և հոգեբան: 1939-ից՝ ԱՄՆ-ում: 1920-ական թթ-ին փորձել է *ֆրեյդիզմը* միավորել *մարքսիզմին*: Հանդես է եկել սեքսուալ հեղ-յան քարոզով և պահանջել «ճնշողական» հոգեբ-յան վերացումը: 1930-ական թթ-ի վերջից հեռացել է ուղղափառ ֆրեյդիզմից և զարգացրել տիեզ. կենս. էներգիայի («օրգոնե») վերաբերյալ ուսմունք:

ՌԱՅԽԵՆԲԱԽ (Reichenbach) Հանս (1891–1953), գերմանացի փիլ. և տրամաբան: Հետազոտել է հիմնականում պատճառականության խնդիրը, զարգացրել հավանականության տրամաբ-յունը, որն օգտագործել է քվանտ. մեխանիկայի տեսության մեկնաբանությունների համար:

ՌԱՅԽԼԻՆ (Reuchlin) Յոհան (1455–1522), գերմանացի հումանիստ, փիլ.: Կաթոլիկ աստվածաբանների հետ հոգուտ գիտ. հետազոտությունների ազատության Ր-ի բանավեճը (հայտնի է «ռայխլինյան վեճ» անունով) պաշտպանել են բազմաթիվ հումանիստ մտածողներ («Մութ մարդկանց նամակները» ևն):

ՌԱՅԽՇՏԱՅՆ (Reichstein) Թադեուշ (1897–1996), շվեյցարացի քիմիկոս-օրգանիկ: Ուսումնասիրել է մակերիկամի կեղևի հորմոնները: Անջատել է կորտիզոնը և հաստատել նրա քիմ. կառուցվածքը (1936–40, Է. *Քենդալից* անկախ): Նոբելյան մրց. (1950, Է. Քենդալի և Ֆ. Շ. Հենչի հետ):

ՌԱՅԽՍԿԱՆՑԼԵՐ (գերմ.՝ Reichskanzler), 1. համագերմ. միակ նախարարն ու Բունդեսրատի նախագահը Գերմ. կայսրությունում (1871–1918): Նշանակել է կայսրը: Ր. ղեկավարել է կայսրության գործադիր իշխանությունը: 2. Կառ-յան ղեկ-ը Վայմարյան հանրապետությունում (1919–33): Նշանակել է նախագահը: 1933-ից ստեղծվել են այսպես կոչված նախագահ. կաբինետներ: 1933–45-ին Ր. Ա. Հիտլերն էր, որը, 1934-ին վերացնելով նախագահի պաշտոնը, միավորել է պետության և կառ-յան ղեկ-ի լիազորությունները:

ՌԱՅԽՎԵՐ (գերմ.՝ Reichswehr, Reich – պետություն, կայսրություն և Wehr – պաշտ-

պանություն), Գերմանիայի ՋՈՒ 1919–35-ին, ձևավորվել են համաձայն 1919-ի Վերսալյան հաշտության պայմանագրի: Հավաքագրվել են վարձու հիմունքներով (115 հզ. մարդ և սահմանափակ թվով նավեր): 1935-ի մարտին Գերմանիան չեղյալ է հայտարարել Վերսալյան պայմանագրի ռազմ. սահմանափակումները և սկիզբ դրել համընդհ. զինապարտության հիմունքներով վերմախտի ձևավորմանը:

ՌԱՅԽՍՏԱԳ (գերմ.՝ Reichstag, < Reich – պետություն, կայսրություն և Tag – ժողով), 1. կայսրին կից դասային ներկայացուցչության մարմին Հռոմ. սրբազան կայսրությունում XII դ–ից: 2. Հս–գերմ. միության (1867–71) և Խորհրդարանների ներքին պալատը, Վայմարյան հանրապետության (1919–33) խորհրդարանների ստորին պալատը, օրենսդրությանը, բյուջեի ընդունմանը և իշխանության իրականացման հսկողությանը մասնակցող ընտրովի մարմին:

ՌԱՅԿԻՆ (Գուրևիչ) Արկադի Իսաակովիչ (1911–1987), ռուս. էստրադայի հրեա դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1968): Սոց. աշխ. հերոս (1981): Կ. Ա. *Ռայկինի* հայրը: 1942–ից՝ Լենինգրադի մանրապատումների թատրոնի (1982–ից՝ Մոսկվայի մանրապատումների պետ. թատրոն, 1987–ից՝ «Սատիրիկոն», 1991–ից՝ Ա. Ի. Ռայկինի անվ. թատրոն) գեղ. ղեկ.: Ակնթարթ. կերպարանափոխման վարպետ է: Հանդես է եկել մենախոսություններով, ֆելիետոններով, սկետչներով, որտեղ օգտագործել է էքսցենտրիկ և բուֆոնադայի ձևեր: Ներկայացումներում («Մի բաժակ թեյի շուրջ», 1940, «Լուսացույց», 1967, «Նորին մեծության թատրոն», 1981, ևն) ստեղծել է սուր երգիծ. և քնար. կերպարներ: Նկարահանվել է կինոյում («Մենք հանդիպել ենք ինչ-որ տեղ...», «Արվեստի կախարդական ուժը» ևն): Լենինյան մրց.(1980):

ՌԱՅԿԻՆ Կոնստանտին Արկադևիչ (ծ. 1950), ռուս. էստրադայի հրեա դերասան: ՌԴ ժող. արտիստ (1992): Ա. Ի. *Ռայկինի* որդին: 1987–ից՝ Մոսկվայի «Սատիրիկոն» թատրոնի (1988–ից՝ գեղ. ղեկ.) դերասան (Գրեգոր Զամզա՝ Ֆ. Կաֆկայի «Կերպափոխում», Սոլանժ՝ Ժ. Ժենեի «Սպասուհիները», Սիրանո՝ Է. Ռոստանի «Սիրանո դը Բերժըրակ», ևն): Բեմադրել է Վ. Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ» (1995), Մոլիերի «Քաոյակ» (1999), Կ. Գոցցիի «Կապույտ հրեշ» (2008), «Փողեր» (ըստ Ա. Ն. Օստրովսկու, 2010) ևն: Նկարահանվել է կինոյում: ՌԴ Պետ. մրց. (1995, 2002):

ՌԱՅԿՈՎ Եվգենի Տիխոնովիչ (1937–2010), ռուս. երգիչ (քնարադրամատիկ. տենոր): ԽՍՀՄ ժող. արտիստ (1982): 1961-ից՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մեներգիչ (Ֆաուստ՝ Շ. Գունոյի «Ֆաուստ», Ռայմոնդ՝ Պ. Ի. Չայկովսկու «Օռլեանի կույսը», ևն), 1990–94-ին՝ տնօրեն:

ՌԱՅՆԵՍ (Reines) Ֆրեդերիկ (1918–1998), ամերիկացի ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են տարր. մասնիկներին: Փորձով ապացուցել է *նեյտրինոյի* (1953–56, Կ Կոուենի հետ), ինչպես նաև չեզոք հոսանքների (1976, համահեղ.) գոյությունը: Նոբելյան մրց. (1995, Մ. *Պերլի* հետ):

ՌԱՅՆԻՍ (Rainis, Պլիեկշանս) Յանիս (1865–1929), լատիշ բանաստեղծ, դրամատուրգ: Լատվ. ԽՍՀ ժող. բանաստեղծ (1940, հետմահու): 1897–1903-ին բանտարկվել է և աքսորվել, 1905–20-ին՝ վտարանդի: Հեղինակ է «Հեռավոր արձագանքներ կապույտ երեկոյի» (1903), «Հողմացանք» (1905), «Վերջ և սկիզբ» (1912), «Դեպի տուն» (1920) բանաստեղծությունների ժող-ների, «Կիսաիդեալիստը» (1904), «Փչիր, հովիկ» (1913) չափածո պիեսների, «Հովսեփն ու նրա եղբայրները» (1919), «Իլյա Մուրոմեց» (1922) ողերգությունների:

ՌԱՅՆԻՐ, գործող հրաբուխ ԱՄՆ-ի Կասկադյան լ-ներում: Բարձր.՝ 4392 *մ*: Կան սառցադաշտեր (ընդհ. մակերեսը՝ 140 *կմ²*): Վերջին ժայթքումը՝ 1882-ին:

ՌԱՅՆԼԱՆԴ-ՊՖԱԼԶ (Rheinland-Pfalz), երկրամաս Գերմանիայում՝ Հռենոսի և նրա Մոզել ու Սաար վտակների ավազանում: Տարածքը՝ 19,8 հզ. *կմ²*, բն.՝ 4 մլն (2011): Վարչ. կենտրոնը՝ Մայնց:

ՌԱՅՆՈՎ Բոգոմիլ (1919–2007), բուլղար գրող, արվեստաբան: Բուլղարիայի մշակույթի ժող. գործիչ (1971): ԲԺՀ Սոց. աշխ. հերոս (1976): Հեղինակ է «Տեսուչը և գիշերը» (1964), «Պարոն Ոչ ոքը» (1967) վիպակների ու պատմվածքների, «Միայն տղամարդկանց համար» (1979), «Մի՛ ծիծաղեցրու ինձ» (1983) դետեկտիվ–արկած. վեպերի, նաև բանաստեղծությունների, փաստագր. էսսեների ժող-ների, գեղագիտ-յանը և կերպարվ-ին վերաբերող աշխ-ների:

ԲԺՀ Դիմիտրովյան մրց. (1969):

ՌԱՅՊՈՒՐ, ք. Կենտր. Հնդկաստանում, Չհատիսգարհ նահանգ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 643 հզ. (2010): Գղտ. շրջանի առևտր. կենտրոն է: Կան տեքստիլ, սննդի, շինանյութերի արդ-յան ձեռն-ներ:

ՌԱՆԵՎՄԿԱՅԱ (Ֆելդման) Ֆաինա Գրիգորևնա (Գեորգևնա, 1896–1984), ռուս. հրեա դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1961): 1949–55-ին և 1963-ից՝ Մոսսովետի թատրոնի դերասանուհի: Բնութագր. դերերի վարպետ է: Կերպարներին հաղորդել է դրամատիկ., անգամ՝ ողերգ. խորություն (Բերդի՝ Լ. Հելմանի «Աղվեսիկներ», Լյուսի Կուպեր՝ Վ. Դելմարի «Այնուհետև՝ լռություն», Ֆելիցատա՝ Ա. Ն. Օստրովսկու «Ճշմարտությունը լավ է, իսկ երջանկությունն ավելի լավ», ևն): Նկարահանվել է կինոյում («Ընկեցիկը», «Երազանք», «Հարսանիք», «Մոխրոտը» ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1949, 1951-ին՝ կրկնակի):

ՌԱՆՆԵՐ (Rahner) Կառլ (1904–1984), գերմանացի կաթոլիկ աստվածաբան, ճիզվիտ: *Թոմիզմի* ավանդույթները համադրել է էկզիստենցիալ փիլ-յան և *պերսոնալիզմի* գաղափարների հետ: «Եկեղեցական-աստվածաբանական բառարան» (հ. 1–10,1957) և «Աշխարհի խորհուրդը» (հ. 1–6, 1967–69) հանրագիտարան. հրտ-յունների հրտ. և խմբ.:

ՌԱՆԿԱԳՈՒԱ (Rancagua), ք. Չիլիում, Լիբերտադոր մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 244,6 հզ. (2010): Գինեգործության և խաղողագործության շրջանի կենտրոնն է: Հիմնադրվել է 1743-ին:

ՌԱՆԿԻՆ (Rankine) Ուիլյամ Ջոն Մակուորն (1820–1872), շոտլանդացի ճարտարագետ, ֆիզիկոս, տեխ. թերմոդինամիկայի ստեղծողներից: Առաջարկել է շոգեշարժիչի 1-ին տես. ցիկլը (Ռ-ի ցիկլ), ջերմաստիճան. սանդղակ (Ռ-ի սանդղակ), որի զրոն համընկնում է թերմոդինամիկ. ջերմաստիճանի զրոյին, իսկ մեծությամբ Ռ-ի 1 աստիճանը = 5/9 K (չի օգտագործվել):

ՌԱՆՉԻ, ք. Հնդկաստանում, Ջարկհանդ նահանգ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ ավելի քան 1 մլն (2010):

ՌԱՆՉՊԱՐ (պարսկ.՝ rangbar – հողի աշխատավոր, մշակ), գյուղացիության կատեգորիա Մերձ. Արևելքի որոշ երկրներում: Արլ. Հայաստանում ռանչպարությունը տարածվել է XVII–XIX դդ-ում՝ պարսիկների ազդեցությամբ: Ռ-ները հիմնականում հողից և արտադրամիջոցներից զուրկ հողագործներ էին, մշակում էին կալվածատիրոջ հողը՝ փոխարենն ստանալով բերքի որոշ մասը: «Ռ.» եզրույթը հաճախ օգտագործվում է ընդհանրապես հողի աշխատավորի իմաստով:

ՌԱՆՎԻԵ (Ranvier) Լուի Անտուան (1835–1922), ֆրանսիացի հյուսվածաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. անդամ (1882): Կ. *Բեռնարի* աշակերտը: Ուսումնասիրել է ոսկրերի, մկանների, շարակց. և նյարդ. հյուսվածքների կառուցվածքը: Նկարագրել է նյարդաթելերի, միելինային թաղանթների հանգույցներն ու սեղմվածքները: Հեղինակ է մանրադիտակ. տեխնիկայի և հյուսվածաբան. հետազոտությունների ձեռնարկի:

ՌԱՇ (Rush) Բենջամին (1745–1813), ամերիկացի բժիշկ և պետ. գործիչ, հոգեբուժության հիմնադիրն ԱՄՆ-ում: Դասակարգել է հոգեկան հիվանդությունները և ստեղծել երկրում հոգեբուժության առաջին ձեռնարկը (1812): 1776-ին, որպես պատգմ. Փենսիլվանիայից, ստորագրել է անկախության հռչակագիրը:

ՌԱՇԵԼ (Rachel, Էլիզ Ռաշել Ֆելիքս, 1821–1858), ֆրանսիացի դերասանուհի: 1838-ից՝ «Կոմեդի Ֆրանսեզ» (Փարիզ) թատրոնի դերասանուհի: Խաղացել է դաս. ողերգություններում (Կամիլլա՝ Պ. Կոռնելի «Հորացիոս», Ֆեդրա՝ Ժ. Ռասինի «Ֆեդրա», ևն): Ռ-ի խաղն աչքի է ընկել հուզականությամբ և մոտ էր ռոմանտիզմի արվ-ին:

ՌԱՇԻԴ ԱԴ-ԴԻՆ, Ռաշիդ Էդ-Դին, Ֆազլուլա իբն Աբուլ Խեյր Համադանի (1247–1318), պարսիկ մատենագիր: Ղազան խանի օրոք (1295–1304) նշանակվել է մեծ վեզիր (1298–1317): Գրել է «Տարեգրությունների ժողովածու» («Ջամե-աթ-թավարիխ», պարսկ., հ. 1–3, 1301–11) պատմ. երկը: Մեղադրվել է դավադրության մեջ և մահապատժի ենթարկվել:

ՌԱՇԻԴՅԱՆ Գարրի Հայկի (1933–2015), ճարտ.: ՀԽՍՀ վաստ. ճարտ. (1981): Պրոֆ. (1989): Հեղինակ է էջմիածնի հրապարակի բարեկարգման (1982), փոստի շենքի (1985), հաս. կենտրոնի (1973–85), «Վաղարշապատ» թաղամասի (1975–81, ՀԽՍՀ Պետ. մրց., 1981), «Հավերժություն» («Մաշտոց և Կորյուն») հուշարձանի, Երևանում՝ ՀՄՊ-ում հաղթանակի հուշահամալիրի (1985–86), «Դավիթաշեն» հանգստի գոտու և այլ նախագծերի: ՀՀ նախագահի (2012) մրց.:

ՌԱՇԻԴՅԱՆ Վարդգես Ռաշիդի (1922–2000), պարող, բալետմայստեր: ՀՀ վաստ. արտիստ (1956): 1939-ից՝ Հայկ. ժող. երգիպարի անսամբլի մենապարող, 1966–95-ին՝ Երևանի երկաթուղային մշակույթի տան «Հայաստան» պարի անսամբլի հիմնադիր-գլխ. բալետմայստեր: Մենապարերից են՝ «Ջուռնի տրնգի», «Արտաշատի» ևն, բեմադրել է «Սասունի պարերը», «Շորորը», «Բերդպարը», «Սրերով պարը» ևն:

ՌԱՇԻԴՈՎ Շարաֆ Ռաշիդովիչ (1917–1983), ուզբեկ քաղ. և պետ. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1974, 1977): 1950–59-ին՝ Ուզբ. ԽՍՀ ԳԽ նախագահության նախա-

գահ, 1959–ից՝ Ուզբեկստանի կոմկուսի ԿԿ 1-ին քարտուղար:

ՌԱՇԻԴՈՎ, Ռաշիդ Մեջիդի (1928–2011), դարգին բանաստեղծ: Դաղստանի ժող. բանաստեղծ (1978): Հեղինակ է «Արևի բուրմունքը» (1963), «Հարևանները ծիծաղում են» (1969), «Վաղ գարնան գույները» (1972), «Իր ճակատագիրը» (1975), «Օրը պայծառանում է» (1980), «Եղյամ» (1985) բանաստեղծությունների ու պոեմների ժող-ների:

ՌԱՇՄԱՃՅԱՆ Սեդրակ Տիգրանի (1907–1978), գեղանկարիչ: ՀԽՍՀ վաստ. նկարիչ (1967): Տիգրան ***Ռաշմաճյանի*** որդին: Հեղինակ է բնանկարների («Սևան», 1939, ևն), դիմանկարների («Զուլող Արամը», 1949, ևն), թեմատիկ պատկերների («Գործարանի ինտերիեր: Չուգունի ձուլում», 1959, ևն), գրաֆիկ. գործերի (կոմպոզիցիաներ, «Սասունցի Դավիթ» էպոսի նկարազարդումները, 1939, 30 թերթ, 11-ը՝ ՀԱՊ-ում), որոնցում ընդարձակել է ռեալիստ. կերպավորման սահմանները:

ՌԱՇՄԱՃՅԱՆ Տիգրան Հակոբի (1862–1946), մանկավարժ: Փիլ. գիտ. թեկնածու (1896): Սեդրակ ***Ռաշմաճյանի*** հայրը: Դասավանդել է Ալեքսանդրապոլի, Երևանի դպրոցներում, ՀՊՄԻ-ում, ԵՊՀ-ում, ԵՊԿ-ում: Հեղինակ է գիտամանկավարժ. աշխ-ների:

ՌԱՄ Չանդրա Ռաջեշվար (1914–1994), Հնդկաստանի և միջազգ. բանվ. շարժման գործիչ: 1950-ից՝ Հնդկաստանի կոմկուսի քաղբյուրոյի (1958-ից՝ Կենտգործկոմի) անդամ, 1950–51-ին՝ Հնդկաստանի կոմկուսի ԿԿ գլխ. քարտուղար:

ՌԱՄ Չինտամանի Նագեսա Ռամաչանդրա (ծ. 1934), հնդիկ քիմիկոս: Հնդկաստանի ԳԱԱ նախագահ (1985–86), ՌԳԱ արտ. անդամ (1988): Աշխ-ները վերաբերում են պինդ մարմնի քիմիային, օքսիդներում էլեկտրոն. և ֆազ. անցումներին:

Բհարատ Ռանտա բարձրագույն քաղաց. մրց. (2013, Հնդկաստան):

ՌԱՉԿԻ (Rački) Ֆրանյո (1828–1894), 1861-ից՝ Խորվաթիայի ժող. ազատ. կուս-յան, 1880-ից՝ Անկախ ժող. կուս-յան ղեկ-նե-րից, պատմաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1869): 1867–86-ին՝ Հաբսվալավիայի գիտ-յունների և արվ-ների ակադ-ի (Զագրեբ) հիմնադիր նախագահ: Աշխ-ները վերաբերում են հվ. սլավոն-ների IX–XV դդ-ի պատմությանը, ռուս. գրկ-յանը:

ՌԱՉՅՈՒՆԱՍ (Račiūnas) Անտանաս (1905–1984), լիտվացի կոմպոզիտոր: Լիտվ. ԽՍՀ ժող. արտիստ (1965): Հեղինակ է «Երեք թալիսման» (1936), «Արևի քաղաքը» (1965) և այլ օպերաների, «Արևելքի արեգակը» (1948) օրատորիայի, սիմֆոնիաների, դաշնամուրի և նվագախմբի համար կոնցերտների (1979, 1981): Լիտվ. ԽՍՀ Պետ. մրց. (1975):

ՌԱՊՈՊՈՐՏ Իոսիֆ Աբրամովիչ (1912–1990), ռուս. գենետիկ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1979): Սոց. աշխ. հերոս (1990): Աշխ-ները վերաբերում են քիմ. մուտածնությանը, գենի կառուցվածքին, նրա կիրառությանը բնական ընտրության մեխանիզմների ուսումնասիրության, նաև գաղտ. մշակաբույսերի և արդ. միկրոօրգանիզմների ընտրասերման համար:

ՌԱՊՍՈԴԻԱ, (հուն.՝ rhapsodia – ***ռապսոդի*** երգ, հագներգություն), ժողովրդաէպիկ. ոճով (հաճախ՝ ժող. թեմաներով), բազմաբնույթ դրվագներից բաղկացած ազատ ձևի վոկալ կամ գործիք. ստեղծագործություն (Ֆ. Լիստի 19 «Հունգարական ռապսոդիաները», Յ. Բրամսի, Ա. Դվորժակի, Մ. Ռավելի և ուր. Ռ-ները): Ժանրի սկզբնավորողներից է Դ. Շուբարտը («Ռ.» կոչված երգերի և դաշնամուր. պիեսների շարք, 1786):

ՌԱՊՍՈԴՆԵՐ (հուն.՝ rapsodoss, < rapto – հորինել և ode – երգ), էպիկ. պոեմների հույն երգիչ-դեկլամատորներ, որոնք պոեմները (մասնավորապես՝ Հոմերոսինը), արտասանել են երգելով (տես ***Ասերգ***)՝ առանց նվագակցության: Հին Հունաստանում (մ. թ. ա. V–IV դդ.) Ռ-ի արվ-ը դարձել է թատերարվ-ի մաս (արտասանությունը նվագակցել են) և գոյատևել մինչև մ. թ. I դ.:

ՌԱՋԱ (սանսկրիտ – թագավոր), իշխան. տիտղոս Հնդկաստանում: Վեդաներում բազմիցս օգտագործվել է առաջնորդ, իսկ հին հուշարձաններում՝ դհարմաշաստրաներում (կրոնահիրավ. քննախոսություններ), և ***«Արտհաշաստրա»*** ժող-ում, տիրակալ իմաստով: Միջին դարերում «Ռ.» են անվանել հինդու ֆեոդալ իշխող-ներին: Գաղութ. Հնդկաստանում՝ որոշ խոշոր հողատերերի պատվ. տիտղոս:

ՌԱՋԱԳՈՊԱԼԱՉԱՐԻԱ, Չակրավարտի (1878–1972), հնդ. ազգ-ազատագր. շարժման գործիչ: 1948–50-ին՝ Հնդկաստան դոմինիոնի 1-ին հնդիկ գեն-նահանգապետը: Սվատանտրայի հիմնադիրներից և առաջնորդներից է:

ՌԱՋԱՄԱՆԴՐԻ, ք. Հնդկաստանի Անդհրա Պրադեշ նահանգ-ում՝ Գոդովարի գետի դելտայում: Բն.՝ 344 հզ. (2011):

ՌԱՋԱՆԳ (Rajaŋg), գետ Կալիմանտան կղզում՝ Մալայզիայում: Երկ.՝ 600 *կմ*, ավազանը՝ 60 հզ. *կմ*^{2}: Թափվում է Հվ-չին. ծով՝ առաջացնելով դելտա: Ծով. նավերի համար նավարկելի է Սիբու ք-ից:

ՌԱՋԱՍՏԱՆ (բառացի՝ ռաջաների երկիր), 1. պատմ. մարզ Հնդկաստանում: Միջին դարերում ձևավորվել էին մոտ 20 ռաջպուտ. իշխանություններ (այստեղից՝ նրա Ռաջպուտանա անվանումը): 1947-ին իշխանությունները միացել են Հնդ. միությանը, 1950-ից՝ Հնդկաստանի Հանրապետության նահագ: 2. Նահագ՝ Հնդկաստանի հս-արմ-ում: Տարածքը՝ 342 հզ. *կմ*^{2}, բն.՝ 68,6 մլն (2011): Վարչ. կենտրոնը՝ ***Ջայպուր***:

ՌԱՋԱՍՏԱՆՅԻՆԵՐ, հնդարիական ժողտ Հնդկաստանում, Ռաջաստանի (43,5 մլն, 2001) հիմն. բնակչությունը: Ապրում են նաև Պակիստանում (ավելի քան 200 հզ.): Լեզուն՝ ռաջաստանի: Հավատացյալները հիմնականում հինդուիզմի հետևորդ են:

ՌԱՋԿՈՏ, ք. Հնդկաստանի Գուջարաթ նահագ-ում՝ Կատհիյավար թ-կղզում: Բն.՝ շուրջ 1,5 մլն (2010): Առևտր. կենտրոն է: Կան մեքենաշին., մետաղամշակման, թեթև արդ-յան և այլ ձեռն-ներ:

ՌԱՍԱՆԵՐ (ֆրանս. եզ. թիվ՝ race), ***մարդացեղեր***, պատմականորեն կազմավորված և ընդհ. ժառանգ. հատկանիշներով ծագման (սերման) միասնականություն արտահայտող մարդկանց արեալային խմբեր: Ըստ արդի մարդաբանության հիմնավորումների՝ բոլոր Ռ. առաջացել են նույն տեսակի բրածո մարդակերպից: Հստակությամբ զատորոշվում են 3 հիմն.՝ ***նեգրոիդ***, ***ևրոպեոիդ*** և ***մոնղոլոիդ ռասաներ***:

ՌԱՍԵԼ, (Russell) Բերտրան (1872–1970), լորդ, անգլիացի փիլ., մաթեմատիկոս, տրամաբան, նեոռեալիզմի և նեոպոզիտիվիզմի հիմնադիրն Անգլիայում: Զարգացրել է տրամաբ-յան դեդուկտիվ-աքսիոմատիկ. համակարգը՝ մաթ-ի տրամար. հիմնավորման համար: Համահեղինակ է «Մաթեմատիկայի հիմունքները» (Ա. Ուայթհեդի հետ, հ. 1–3, 1910–13) գրքի. մաթ. տրամաբ-յան հիմնարար երկերից է: Նորելյան մրց. (1950, գրկ.):

ՌԱՍԵԼ, Հենրի Նորիս (1877–1957), ամերիկացի աստղաֆիզիկոս: Առաջիններից է մշակել աստղերի էվոլյուցիայի տեսությունը, որոշել Արեգակի մթն-ում քիմ. տարրերի պարունակությունը, տվել Տիեզերքում քիմ. տարրերի պարունակության գնահատական, զբաղվել աստղերի սպեկտրների և նրանց լուսատվության կապի ուսումնասիրությամբ: Ռ-ի անունով կոչվել են փոքր մոլորակ (№ 1762) և խառնարան՝ լուսնի տեսանելի կողմում:

ՌԱՍԵԼ, Ջեյմս (ծ. 1953), ամերիկացի հայագետ, արևելագետ: Հեղինակ է «Զրադաշտությունը Հայաստանում» (1987), «Հովհաննես Թլկուրանցին և հայ միջնադարյան քնարական ավանդույթը» (1987), ««Քաշտի քաջերը». հայկական էպոս» (2000) աշխ-ների: Թարգմանել է հայ-ից: Սեփ. մենաշնորհությունները տպագրել է Չարենցի անտիպներից:

ՌԱՍԵԼ, Ջոն (1792–1878), կոմս, Մեծ Բրիտանիայի վարչապետ՝ 1846–52 և 1865–66-ին, վիգերի առաջնորդը: 1835–39-ին՝ ՆԳ, 1839–41-ին՝ գաղութների գործերի, 1852–53 և 1859–65-ին՝ ԱԳ նախարար: Բռնություններ է կիրառել չարտիստների և իռլանդ. ազատագր. շարժման նկատմամբ:

ՌԱՍԻԶՄ, ***ռասահետրականություն***, տեսություն, որի համաձայն՝ մարդկությունը, ըստ նրա ֆիզ., մարդաբան., մշակութ. հատկանիշների, բաժանվում է ցածր և բարձր ***ռասաների***: Ռ-ի սաղմերը նկատվել են մարդկային առաջին հանրույթներում, երբ նրանցից յուրաքանչյուրն իրեն վեր էր դասում շրջապատող «բարբարոսներից»՝ այդ կերպ արդարացնելով նրանց ստրկացնելը: Ռ-ի առաջին ուսմունքի հիմնադիր Ժ. Ա. Գիբոնը արիացիներին հռչակել է «բարձրագույն ռասա»: Ռ-ի մարմնավորման բարձրակետը գերմ. ֆաշիզմն էր, որը Ռ. հռչակեց պաշտոն. գաղափարախոսություն՝ այն ծառայեցնելով իր հրեշավոր ոճրագործությունները հիմնավորելուն:

ՌԱՍԻՆ (Racine) Ժան (1639–1699), ֆրանսիացի դրամատուրգ: Հեղինակ է ողբերգ. սիրո մասին «Անդրոմաքե» (բեմ.՝ 1667, հրտ.՝ 1668), «Բրիտանիկուս» (բեմ.՝ 1669, հրտ.՝ 1670, հայ.՝ 1869), «Բայազետ» (բեմ. և հրտ.՝ 1672), «Միհրդատ» (բեմ. և հրտ.՝ 1673, հայ.՝ 1869), «Իֆիգենիան Ավլիսում» (բեմ.՝ 1674, հրտ.՝ 1675, հայ.՝ 1869) ողբերգությունների, «Փեդրա» (բեմ. և հրտ.՝ 1677, հայ. 1861), «Եսթեր» (բեմ. և հրտ.՝ 1689, հայ.՝ 1914), «Գոթողիա» (բեմ.՝ 1690, հրտ.՝ 1691, հայ.՝ 1834) և այլ ողբերգությունների, «Դատամոլներ» (բեմ.՝ 1668, հրտ.՝ 1669, հայ.՝ «Դատասէրք», 1863) կատակերգության:

ՌԱՍԿ (Pack) Ռասմուս Քրիստիան (1787–1832), դանիացի լեզվաբան: Պատմահամեմատ. լեզվաբ-յան, հնդեվրոպաբանության հիմնադիրներից է: Վերծանել է սեպագիր տեքստեր: Անդրադարձել է հայ-ի, սանսկրիտի, զենդ-ի, պհլ-ի և պարսկ-ի ցեղակց. կապերին:

ՌԱՍԿՈԼՆԻԿՈՎ, (Իլյին) Ֆեոդոր Ֆեոդորովիչ (1892–1939), ռուս. քաղ. գործիչ,

դիվանագետ, գրականագետ: 1919–20-ին՝ Վոլգա–Կասպյան ռազմ. նավատորմիղի, 1920–21-ին՝ Բալթ. նավատորմի հրամ.: 1921–23-ին՝ քաղ. ներկայացուցիչ Աֆղանստանում, 1930–38-ին՝ Էստոնիայում, Դանիայում, Բուլղարիայում: Զանգված. բռնությունների համար մեղադրել է Ի. Վ. Ստալինին: Հայտարարվել է «ժողովրդի թշնամի», բռնադատվել, հետմահու՝ արդարացվել:

ՌԱՄԿՈՎԱ Մարինա Միխայլովնա (1912–1943), ռուս օդաչու, մայոր (1942): ԽՄ հերոս (1938): 1938-ին Պ. Դ. Օսիպենկոյի և Վ. Ս. Գրիզոդուբովայի հետ անվայրէջք թռիչք է կատարել Մոսկվայից Հեռավոր Արևելք: ՀՄՊ-ի ժամանակ՝ կանանց ռմբակոծիչ գնդի հրամ.:

ՌԱՍՄՈՒՍՍԵՆ (Rasmussen) Անդրես Ֆոգ (ծ. 1953), դանիացի քաղ. գործիչ: ՆԱՏՕ-ի գլխ. քարտուղար՝ 2009–14-ին, Դանիայի վարչապետ՝ 2001–09-ին: 1985-ից՝ Լիբերալ կուս-յան փոխնախագահ:

ՌԱՍՄՈՒՍՍԵՆ Կնուդ Յոհան Վիկտոր (1879–1933), դանիացի ազգագրագետ և բևեռախույզ: 1902–33-ին ղեկավարել է հետազոտ. արշավներ դեպի Գրենլանդիա և արկտիկ. Ամերիկա: Ուսումնասիրել է էսկիմոսների ազգագրությունը, լեզուն և կենցաղը:

ՌԱՍ-ՇԱՄՐԱ, բլուր Սիրիայում՝ Լաթաքիա ք–ի մոտ: Հայտնաբերվել են բազմաթիվ բնակավայրերի ավերակներ (մ. թ. ա. VII–I դդ.), այդ թվում՝ Ուգարիտ ք–ը՝ պաշտպ. պատերով, տներով, պալատով, տաճարներով ևն:

ՌԱՄՊԵ (Raspe) Ռուդոլֆ Էրիխ (1737–1794), գերմանացի գրող: 1786-ին «Զվարճասեր մարդկանց ուղեկիցը» (1781–83) գերմ. ժող–ից անգլ. է թարգմանել «Մյունխհաուզենի արկածները» (հայ.՝ 1934) գիրքը՝ այն լրացնելով անգլ. պատմությունից քաղված դրվագներով: Ռ–ի շնորհիվ Մյունխհաուզենի կերպարը դարձել է հասարակ անուն՝ ստախոս զրուցաբան–ներին մատնանշելու համար:

ՌԱՄՊԼԵՏԻՆ Ալեքսանդր Անդրեևիչ (1908–1967), ռուս ռադիոտեխնիկ: ԽՄՀՄ ԳԱ ակադ. (1964): Սոց. աշխ. հերոս (1956): Աշխ–ները վերաբերում են ռադիոտեխնիկային և էլեկտրոնիկային: ԽՄՀՄ Պետ. (1951), Լենինյան (1958) մրց–ներ:

ՌԱՄՊՈՒՏԻՆ (Նովիխ) Գրիգորի Եֆիմովիչ (1869–1916), բախտախնդիր: Ռուսաստանի վերջին ցար Նիկոլայ II–ի և թագուհի Ալեքսանդրա Ֆեոդորովնայի սիրելին: Որպես «մարգարե» և «դարմանող»՝ մեծ ազդեցություն է ունեցել ցարի, թագուհու և նրանց շրջապատի վրա: Խառնվել է պետ. գործերին: 1916–ի դեկտ. 16–ի՝ լույս 17–ի գիշերը միապետականների մի խումբ կազմակերպել է Ռ–ի սպանությունը:

ՌԱՄՊՈՒՏԻՆ Վալենտին Գրիգորևիչ (1937–2015), ռուս գրող, հրապարակախոս: Սոց. աշխ. հերոս (1987): Հեղինակ է «Երկնամերձ երկիր» (1966) ակնարկների ու պատմվածքների ժող–ի, «Այս աշխարհի մարդը» (1965), «Վասիլի և Վասիլիսա» (1967), «Հիվանդանոցում» (1995), «Անսպասելի ու անակնկալ» (1997) և այլ պատմվածքների, «Վերջին ժամկետը» (1970), «Ապրիր և հիշիր» (1974, հայ.՝ 1981), «Հրաժեշտ Մատյորային» (1976), «Իվանի դուստրը, Իվանի մայրը» (2003) և այլ վիպակների, «Ռուսաստան. օրեր և ժամանակներ» (1993) հրապարակախոս. հոդվածների ժող–ի:

ԽՄՀՄ (1977, 1987), ՌԴ (2012) Պետ., ՌԴ նախագահի (2003), Կառ–յան (2010) մրց–ներ:

ՌԱՍՏՐԵԼԼԻ (Rastrelli) Բարտոլոմեո Ֆրանչեսկո (1700–1771), իտալացի ճարտ.: Տարած. թափր, ծավալների հստակությունը, հատակագծերի խիստ կազմակերպվածությունը զուգակցել է ճարտ. զանգվածների պլաստիկության, քանդակ. հարդարանքի և գույնի, արտասովոր զարդանախշերի հետ (Սմոլնու վանքը, 1748–64, Զմեռ. պալատը, 1754–62, Ս. Պետերբուրգում, Մեծ պալատը՝ Պետերհոֆում, 1747–52, Եկատերինյան պալատը Ցարսկոյե Սելոյում, 1752–57):

ՌԱՍՈՒԼ Ռզա (Ռասուլ Իբրահիմ օղլի Ռզաև, 1910–1981), ադրբեջանցի բանաստեղծ, թարգմանիչ: Ադրբ. ԽՍՀ ժող. բանաստեղծ (1960): Սոց. աշխ. հերոս (1980): 1965–77-ին՝ Ադրբ. խորհրդ. հանրագիտարանի գլխ. խմբ.: Հեղինակ է «Անմահ հերոսները» (1942), «Յասում և սեր» (1943) բանաստեղծությունների ու պատմվածքների ժող–ների, «Լեյլի ու Մեջնուն» (1973) պոեմի, «Եղբայրներ» (բեմ.՝1956), «Օրենք» (1963) պիեսների:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ՌԱՎԱԼՊԻՆԴԻ, ք. Պակիստանի Փենջաբ պրովինցիայում: Բն.՝ 2 մլն (2010, Իսլամաբադ ք–ի և այլ բնակավայրերի հետ կազմում է ագլոմերացիա՝ շուրջ 3 մլն բնակչությամբ): 1962–ի սահմանադրությամբ եղել է Պակիստանի ժամանակավոր մայրաքաղաքն Իսլամաբադի շին–յան ժամանակ:

ՌԱՎԵԼ (Ravel) Մորիս (1875–1937), ֆրանսիացի կոմպոզիտոր: Գուներանգ. հարմոնիայում, էկզոտիկ. ռիթմիկայում նրա ստեղծագործ. բացահայտումները, նաև իմպրեսիոնիստ. գործերը նպաստել են նոր ոճ. հոսանքների զարգացմանը XX դ–ի երաժշտության մեջ: Գրել է «Իսպանական ժամ» (1909) օպերան, «Դափնիս և Քլոե» (1912) բալետը, «Իսպանական ռապսոդիա» (1908), «Վալս» (խորեոգրաֆիկ պոեմ, 1920), «Բոլերո» (1928)՝ նվագախմբի համար, կոնցերտներ՝ դաշնամուրի և նվագախմբի (1930, 1931), «Գնչուհի» (1924)՝ ջութակի և նվագախմբի համար, դաշնամուր. պիեսներ («Ջրի խաղը», 1901, «Արտացոլում», 1905, շարք, ևն) և այլ գործեր:

ՌԱՎԵՆՆԱ (Ravenna), ք–նվինգստ Հս. Իտալիայում, Էմիլիա Ռոմանիա մարզի Ռավեննա պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 152 հզ. (2010): 402–ից հետո եղել է Արմ. Հռոմ. կայսրության, օստգոթերի թագավորության, Ռավեննայի էկզարխատի և լանգոբարդների թագավորության մայրաքաղաքը: Շարտ. հուշարձաններից են Կլասսե նավամատույցը, որտեղ VII դ–ում եղել են հայերից կազմված բանակաթեմ, Գալլա Պլաչիդիայի դամբարանը (մոտ 440), ուղղափառների մկրտատունը (V դ–ի կես), Սանտ Ապոլլինարե Նուովո եկեղեցին (VI դ–ի սկիզբ), Թեոդորիքի պալատը (VI դ–ի սկիզբ կամ VIII դ–ի) և դամբարանը (մոտ 520), Սան Վիտալե (526–547) եկեղեցին ևն: Ռ. եղել է օստգոթերի և բյուզ. արվ–ի կենտրոն Իտալիայում: Ռ–ում է Ա. *Դանտեի* շիրմաքարը:

ՌԱՎԵՆՆԱՅԻ ԷԿԶԱՐԽԱՏ (քրմապետություն), բյուզ. տիրույթ Հս. Իտալիայում (կենտրոնը՝ Ռավեննա): Ստեղծվել է 580-ական թթ–ին՝ որպես առաջադիրք՝ բարբարոսների հարձակման դեպքում: 751-ին նվաճել են *լանգոբարդները*:

ՌԱՎԵՆՍԲՐՅՈՒԿ (Ravensbrück), կանանց համակենտրոնացման ճամբար ֆաշիստ. Գերմանիայում՝ Ֆյուրստենբերգ ք–ի մոտ, 1939–45-ին: Գերվածների թիվն անցել է 130 հզ–ից: 93 հզ. մարդ սպանվել է: Ողջ մնացածներին 1945-ի ապրիլի 30-ին ազատել են խորհրդ. զորքերը:

ՌԱՎԵՆՍԿԻԽ Բորիս Իվանովիչ (1914–1980), ռուս. ռեժ.: ԽՄՀՄ ժող. արտիստ (1968): 1960–70-ին՝ Մոսկվայի Ա. Ս. Պուշկինի անվ. դրամատիկ., 1970–76-ին՝ Փոքր թատրոնների գլխ. ռեժ. (Ն. Մ. Դյակոնովի «Օժիտով հարսանիք», 1950, Լ. Ն. Տոլստոյի «Խավարի իշխանությունը», 1956, Ի. Պ. Դրուցեի «Վերադարձ ի շրջանս յուր», 1978): ԽՄՀՄ (1951, 1972), ՌԽՖՍՀ (1967) Պետ. մրց–ներ:

ՌԱՎԻ, գետ Հնդկաստանում և Պակիստանում, Չինաբի ձախ վտակը (Ինդոսի ավազան): Երկ.՝ 725 *կմ*: Սկիզբ է առնում Պիր Փանջալ լ–շղթայից, հոսում է Փենջաբով: Ափին է Լահոր ք–ը (Պակիստան):

ՌԱՎԻՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1187, Իկոնիայի սուլթանության և Կիլիկյան Հայաստանի զորքերի միջև մայիսին Սիս մայրաքաղաքից ոչ հեռու՝ Ռավինի դաշտում: Իկոնիայի թուրքմեն. զորքերը՝ ոմն Ռուստամի գլխավորությամբ, ներխուժել են Կիլիկյան Հայաստան, որոնց ոչնչացրել է նորընծա իշխան Լևոն Բ–ն փոքրաթիվ ջոկատով՝ հանկարծակի հարձակմամբ: Ազատագրել են Պռականան՝ կարևոր բերդով, Հայաստանի մի քանի այլ շրջաններ, հաղթանակով զգալիորեն ամրապնդել են Կիլիկյան Հայաստանի սահմանները ու բարձրացրել պետության միջազգ. հեղինակությունը:

«ՌԱՄԱՆ 600», ՌԴԱ ռադիոաստղադիտակ՝ օղակի շուրջ 60 *մ* տրամագծով, խոշորագույն օղակաձև ռադիոաստղադիտակ՝ փոփոխ. պրոֆիլի անտենայով: Տեղադրված է Հս. Կովկասում՝ Զելենչուկ կայարանի մերձակայքում: Նախատեսված է տիեզ. ռադիոաղբյուրների 8 *մմ*–21 *սմ* ընդգրկույթի ռադիոալիքների ուսումնասիրության համար: Ռադիոաղբյուրների անկյուն. կոորդինատների չափման ճշգրտությունը՝ մինչև 0,1″:

ՌԱՄԻԶԱՅ, ք. Վիետնամի հվ–ում, նվինգստ Սիամի ծոցի ափին: Բն.՝ 265 հզ. (2010):

ՌԱՏԿԵ (Ratke, լատ.՝ Ratichius) Վոլֆգանգ (1571–1635), գերմանացի մանկավարժ: *Դիդակտիկայի* որպես ուսուցման տեսության հիմնադիրներից: Աշխ–ներում («Դասավանդման նոր ձև», 1626, ևն) առաջարկել է միջնակարգ դպրոցում մայրենի լեզվով դասավանդման կրթ. ամբողջ. համակարգ, լույս է ընծայել դիդակտիկորեն մշակված դասագրքերի շարք (գերմ.):

ՌԱՏՅԵԼ (Ratzel) Ֆրիդրիխ (1844–1904), գերմանացի աշխարհագետ, ազգագրագետ: Սոցիոլոգ, անթրոպոաշխարհագր. ուղղության դպրոցի հիմնադիրներից: Լայպցիգի համալսարանի պրոֆ. (1866): Աշխ–ները վերաբերում են մարդու և շրջակա բնության միջավայրի փոխհարաբերություններին: Ռ–ի գաղափարները մեծ ազդեցություն են ունեցել նացիզմի ձևավորման վրա:

ՌԱՏՈՒՇԱ (լեհ.՝ ratusz, գերմ.՝ Rathaus բառից), 1. քաղաք. ինքնակառավարման մարմին Արմ. Եվրոպայի քաղաքներում (XII դ–ից): 2. XVIII–XIX դդ–ում դասային դատ. մարմին Ռուսաստանի փոքր քաղաքներում: 3. Քաղաք. ինքնակառա–

վարման մարմնի շենքն Արմ. Եվրոպայի քաղաքներում: Սովորաբար ունեցել է աշտարակ՝ ժամացույցով:

ՌԱՅԵՄԱՏՆԵՐ, իզոմերազների դասի ֆերմենտներ. կատալիզում են ստերեոիզոմերների (օր.՝ ամինաթթուների) դարձելի փոխակերպումը կենդանի բջիջներում: Բակտերիաների Ռ. օգտագործում են ռացեմատ խառնուրդներից անհատ. ստերեոիզոմերների արդ. ստացման համար:

ՌԱՅԻԱ, (ռուս.՝ ра(диостан)ция), շարժ. կարճալիք հաղորդման–ընդունման ռադիոկայան:

ՌԱՅԻՈՆԱԼ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ, հանրահաշվ. արտահայտություն, որն արմատներ չի պարունակում և ներառում է միայն գումարման, հանման, բազմապատկման, բաժանման գործողություններ: Օր.՝ $a^2 + 1$, $x/(y - z^2)$ ևն:

ՌԱՅԻՈՆԱԼ ԹԻՎ, m/n տեսքի թվեր, որտեղ m և n–ը ամրողջ. թվեր են, և n–ը հավասար չէ 0–ի:

ՌԱՅԻՈՆԱԼ ՖՈՒՆԿՑԻԱ, x փոփոխականի և կամայական թվերի վերջն. թվով թվաբ. գործողությունների արդյունքում ստացվող ֆունկցիա, օր.՝ $R(x) = P(x) / Q(x)$, որտեղ P(x)–ը և Q(x)–ը x–ի բազմանդամներ են:

ՌԱՅԻՈՆԱԼԻԶՄ (լատ.՝ rationalis – բանական), փիլ. ուղղություն, ըստ որի՝ իմացության և մարդկանց վարքի հիմքը բանականությունն է: Հակադրվում է ***իռացիոնալիզմին*** և ***աննսուալիզմին***: XVII–XVIII դդ–ում դասական Ռ–ի ներկայացուցիչները (Ռ. Դեկարտ, Բ. Սպինոզա, Ն. Մալբրանշ, Գ. Լայբնից) միջնադար. սխոլաստիկայի և կրոն. դոգմատիզմի դեմ հանդես են եկել ողջ աշխարհն ընդգրկող անվերջանալի պատճառ. շղթայի՝ բնական կարգի գաղափարներով: Ռ. Լուսավորականության գաղափարախոսության փիլ. սկզբնաղբյուրներից է:

ՌԱՈՒԴ (Raud), էստոնացի նկարիչներ, եղբայրներ: 1. **Քրիստիան Ռ.** (1865–1943), գրաֆիկ: Հեղինակ է ժողդ–ի կյանքը պատկերող նկարների («Կարտոֆիլ հավաքողները», 1896, «Խրճիթում», 1896–98), էստ. էպոսի՝ «Կալևիպոեգի» թեմաներով խորհրդանշ. ոճավորումով գծանկարների: 2. **Պաուլ Ռ.** (1865–1930), դիմանկարիչ («Քեռի Պաուլը ծխամորճով», 1894–96, «Ծերուկը Մուխու կղզուց», 1898):

ՌԱՈՒԽ Սարտ (1903–1980), էստոնացի գրող: Էստ. ԽՍՀ ժող. գրող (1972): Հեղինակ է «Կացին և լուսին» (1935), «Շուկա» (1937) վեպերի, «Մարտական խոսք» (1943), «Հեռացողը» (1978) քնար. բանաստեղծությունների ժող–ների, «Ամառային գիշեր՝ հարթմնի» (1962) չափածո պիեսի, նաև պոեմների, բալլադների, առակների, նովելների:

ՌԱՈՒԼ (Raoult) Ֆրանսուա Մարի (1830–1901), ֆրանսիացի ֆիզքիմիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. անդամ (1899): Հետազոտել է լուծույթների հատկությունները (1882–88), բացահայտել է հետագայում իր անունով կոչված օրենք, ըստ որի՝ լուծիչի հագեցած գոլորշու ճնշման համեմատ. նվազումը նոսր լուծույթի վրա հավասար է նրանում լուծված նյութի մոլյար բաժնին՝ N–ին.

$$\frac{Po - P1}{Po} = N,$$

որտեղ P_o–ն և P_1–ը լուծիչի հագեցած գոլորշու ճնշումն է համապատասխանաբար լուծիչի և լուծույթի վրա:

ՌԱՈՒԽՖՈՒՍ Կառլ Անդրեևիչ (1835–1915), մանկաբույժ, հիվանդանոց. գործի կազմակերպիչը Ռուսաստանում: Աշխ–ները վերաբերում են սրտապարկի և կրծքամզի բորբոքումների ախտորոշմանը: Ս. Պետերբուրգում ստեղծել է տիպային մանկ. հիվանդանոցներ (1864–68, կոչվել են Ռ–ի անունով), Մոսկվայում (1872–76)՝ Վլադիմիրյան հիվանդանոցը (1923–92–ին՝ Ի. Վ. Ռուսակովի անվ.):

ՌԱՈՒՆԴ, 1. (սպորտ) 2 կամ 3 *n* տևողությամբ մրցափուլ բռնցքամարտում, որի ընթացքում տեղի է ունենում մրցամարտը: Ռ–ների թիվը (3–12) մրցման ժամանակ կախված է բռնցքամարտիկների կարգից: 2. (Դիվանագիտ.) համեմատաբար ինքնուրույն, առանձնացված ժամանակահատված տևական և դժվար բանակցություններում:

ՌԱՈՒՇԵՆԲԱԽ Բորիս Վիկտորովիչ (1915–2001), ռուս. մեխանիկոս: ՌԳԱ ակադ. (1984): Սոց. աշխ. հերոս (1990): Աշխ–ները վերաբերում են այրման տեսությանը, տիեզ. սարքերի կողմնորոշման կառավարման հարցերին: Լենինյան մրց. (1960):

ՌԱՈՒՎՈԼՖԻԱ (Rauvolfia), շնամեռուկազգիների ընտանիքի թփեր, կիսաթփեր և ծառեր. պարունակում են կաթնահյութ: Հայտնի է 40–50 (այլ տվյալներով՝ մինչև 100) տեսակ՝ արևադարձներում (բացի Ավստրալիայից): Օձային և մի քանի այլ տեսակների կեղևն ու արմատները պարունակում են ալկալոիդներ, այդ թվում՝ ռեզերպին:

ՌԱՖԱՅԵԼ (Ռաֆֆայելլո Սանտի, Raffaello Santi, 1483–1520), իտալացի գեղանկարիչ, ճարտ.: Բարձր Վերածննդի խոշորագույն վարպետներից: Վաղ շրջանի ստեղծագործությունները («Կոնեստաբիլեի Տիրամայրը», մոտ 1500–02) տոգորված են մեղմ քնարականությամբ: Հոգևոր և ֆիզ. ուժերի ներդաշնակությունը փառաբանել է Վատիկանի պալատի դահլիճների որմնանկարներում (1508–24)՝ հասնելով չափի, ռիթմի, համամասնության, ֆիգուրների և փառահեղ ճարտ. ֆոնների միասնության: Ստեղծել է Աստվածամոր բազմաթիվ պատկերներ («Միքստինյան Տիրամայր», 1515–19), Ֆառնեզեի վիլլայի (մոտ 1511–մոտ 1518) և Վատիկանի օթյակների (1519, աշակերտների հետ) որմնանկարները, դիմանկարներ («Ք. Կաստիլիոնե», մոտ 1514–15): Նախագծել է Հռոմի Սբ Պետրոսի տաճարը, Սանտա Մարիա դել Պոպոլո եկեղեցու Կիջի նրբագեղ կապելլան (1512–20):

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ Մայիս Գևորգի (ծ. 1939), ռեժ.: Պրոֆ. (1993): ՀՀ արվ. վաստ. գործիչ (1983): 1971–73–ին՝ Արտաշատի պետ. թատրոնի գլխ. ռեժ., 1978–99–ին՝ գեղ. ղեկ.: Բեմադրել է «Բոռ» (ըստ Վոյնիչի), Բ. Շոուի «Սատանայի աշտարակը», Շիրվանզադեի «Քաոս» ևն: Հեղինակ է ռադիոբեմադրությունների («Մասնա ծոեր» ևն):

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ Արամ Նազարի (1897–1960), ավիակոնստրուկտոր: Տեխ. գիտ. դ–ր (1953): 1922–ին Օդ. նավատորմի ակադ–ում կառուցել է Ռաֆ–1 (1925) օդանավիկը (ավիետկա), Ռաֆ–2 թեթև ինքնաթիռը (որով 1922–ին կատարվել է թռիչք՝ Մոսկվա–Օդեսա–Բեռլին): 1933–41–ին կառուցել է Ն. Ն. Պոլիկարպովի Ռ–5 ինքնաթիռի մարդատար տարբերակը (ՊՌ–5, 1935–ին դրանով կատարվել է թռիչք՝ Մոսկվա–Դիքսոն կղզի, օդաչու՝ Վ. Ս. Մոլոկով): Նախագծել և կառուցել է թեթև ուղևորատար Ռաֆ–11 և Ռաֆ–Իրիս (1937–39) ինքնաթիռները, գազատուրբին. շարժիչով փորձն. ուղղաձիգ վերթիռով (ԱԼ–9Գ) «Տուրբոլյոտ» ապարատը (1957):

Լենինի, ՀՄՊ 1–ին աստիճանի, ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքանշաններ:

«ՌԱՖԹ. ՋԸՌՆԼ ՕՖ ԱՐՄԻՆԻԸՆ ՓՈԵԹՐԻ ԸՆԴ ՔՐԻԹԻՍԻԶՄ» («Raft. A Journal of Armenian Poetry and Criticizm» – Լաստ: Հայկական չափածոյի և քննադատության հանդես»), գր., գրականագիտ. տարեգիրք [1987–99, Քլիվլենդ (ԱՄՆ)՝ հայ., անգլ.]: Խմբ.՝ Վահե Օշական:

ՌԱՖԻԱ, (Raphia), արմավենիների ցեղ: Տերևները խոշոր են (երկ.՝ մինչև 15–20 *մ*), փետրաձև: Հայտնի է մոտ 30 տեսակ՝ առավելապես Աֆրիկայի արևադարձներում: Որոշ տեսակների ծաղկաբույլերից ստանում են շաքարահյութ, որից պատրաստում են գինի, իսկ տերևներից ու տերևակոթերից՝ մանրաթել (ռաֆին և պիասավա):

ՌԱՖԻԿՈՎ Սագիդ Ռաուֆովիչ (1912–1992), ղազախ քիմիկոս: Ղազախստանի ԳԱ ակադ. (1962), ՌԳԱ թղթ. անդամ (1970): Աշխ–ները վերաբերում են պոլիմերների քիմիային: ԽՍՀՄ Նախ (1983) և Ս. Վ. Լեբեդևի անվ. (1992, հետմահու) մրց–ներ:

ՌԵ, եվրոպ. նոտագրության 7 հնչյուններից, հիմն. դիատոնիկ դո մաժոր հնչյունաշարի II աստիճանը: Նշվում է լատ. D տառով:

ՌԵ... (լատ.՝ re), նախածանց. ցույց է տալիս. 1. կրկնվող, նորացվող, վերականգնվող գործողություն, համապատասխանում է հայ. վերա–նախածանցին (օր.՝ ռեկոնստրուկցիա՝ վերակառուցում): 2. Բառարմատի արտահայտած իմաստին հակառակ գործողություն (օր.՝ ռեակցիա):

ՌԵԱԲԻԼԻՏԱՑՈՒՄ (լատ.՝ rehabilitation – վերականգնում), 1. անհիմն մեղադրված կամ վարկաբեկված մարդու իրավունքների, բարի անվան վերականգնում: 2. Իրավաբ. այն ակտի հետևանքների վերացում, որով անձը ճանաչվել էր որպես իրավախախտման սուբյեկտ և ենթարկվել որոշակի սանկցիայի՝ վարչ., կարգապահ. տույժի, դատապարտման: 3. Մանկավարժ., մասնագիտ. և իրավաբ. միջոցառումների համալիր՝ ֆիզ. և հոգեկան սահմանափակ հնարավորություններով անձանց առողջությունը և աշխատունակությունը վերականգնելու համար:

ՌԵԱԼԳԱՐ, սուլֆիդների դասի միներալ՝ As_4S_4: Կազմված է նարնջակարմիր բյուրեղներից, հատիկավոր զանգվածներից: Կարծր.՝ 1,5–2, խտ.՝ 3,6 $g/սմ^3$: Զրաջերմ., հրաբխ. ծագման է: Արսենի հանքանյութ է:

ՌԵԱԼԻԶՄ (լատ.՝ realis – առարկայական, իրական), 1. ուղղություն փիլ–յան մեջ, ըստ որի՝ գիտակցությունից անկախ գոյություն ունեցող իրականությունը մեկնաբանվում է որպես իղեալ. օբյեկտների կեցություն (***Պլատոն***, միջնադար. սխոլաստիկա) կամ իբրև սուբյեկտից, ճանաչող. գործընթացից և փորձից (XX դ–ի Ռ–ի փիլ–յուն) անկախ իմացության օբյեկտ: Տես նաև ***Նոմինալիզմ*** և ***կոնցեպտուալիզմ***: 2. Գեղ. մեթոդ. գրկ–յան մեջ և արվ–ում: Բնորոշ են կյանքի պատկերման լայն ընդգրկումը, իրականության հետևող. և ճշմարտացի արտացոլումը, երևույթների տիպականությունը, տիպ. բնավորությունները:

Գրականության մեջ Ռ. սկսվել է եվրոպ. Վերածննդի ժամանակաշրջանից, երբ հաստատվել են մարդկային անհատականությունների ըմբռնման և պատկերման նոր սկզբունքներ (Ջ. Բոկաչչո, Ֆ. Ռաբլե, Վ. Շեքսպիր, Մ. Սերվանտես և ուր.)։ Ռ-ի զարգացման նոր փուլը կապված է XVIII դ-ի եվրոպ. լուսավոր. շարժման հետ (Դ. Դիդրո, Գ. Լեսինգ, Հ. Ֆիլդինգ, Դ. Դեֆո և ուր.)։ 1820–30-ական թթ-ին ձևավորվել է Ռ-ի նոր տեսակը՝ քննադատ. Ռ., որի հիմնադիրներն էին Օ. Բալզակը, Ստենդալը, Չ. Դիքենսը և ուր. Եվրոպայում, Ա. Ս. Պուշկինն ու Ն. Վ. Գոգոլը՝ Ռուսաստանում։ Հաջորդ տասնամյակներում Ռ-ի սկզբունքները կիրառել և զարգացրել են Գ. Ֆլոբերը, Գ. Մոպասանը, Լ. Ն. Տոլստոյը, Ֆ. Մ. Դոստոևսկին, Ա. Պ. Չեխովը, Ա. Ֆրանսը, Բ. Շոուն, Թ. Մանը, Է. Հեմինգուեյը և ուր.։ Հայ գրկ-յան մեջ Ռ. ձևավորվել է 1850–60-ական թթ-ին՝ Պ. Պռոշյանի, Գ. Սունդուկյանի, Հ. Պարոնյանի, ավելի ուշ՝ Շիրվանզադեի, Նար-Դոսի, Գ. Զոհրապի, Ե. Օտյանի և ուր. գործերում։

Թատրոնում Ռ. արտահայտվել է XVII դ-ի վերջ–XVIII դ-ի դերասաններ Թ. Բետերտոնի, Դ. Գարրիկի (Մեծ Բրիտանիա), Ի. Ա. Դմիտրևսկու (Ռուսաստան), Վ. Բոգուսլավսկու (Լեհաստան) և ուր. արվ-ում։ XIX դ-ի թատրոնում ստեղծվել են առավել ճշմարտացի կերպարներ, որոշակի պատմ. սոցիալ. միջավայրի պատկերներ, առաջացել է դերասանի, անսամբլի, նաև բեմ. տարածության ճիշտ կազմակերպման, բեմ. ձևավորման նոր բաղադրատարրերի անհրաժեշտությունը։ Հայկ. թատրոնում բեմ. Ռ. ձևավորվել է կենցաղ. վոդևիլների բեմադրություններով, զարգացել հիմնականում Գ. Սունդուկյանի, նաև ռուս. ռեալիստ. դրամատուրգիայի շնորհիվ։ Ռ. առավել վառ կերպով դրսևորվել է Գ. Զմշկյանի, Ա. Մանդինյանի, Մ. Ամերիկյանի, Հ. Աբելյանի, Գ. Ավետյանի, Վարդուհու, Ս. Ադամյանի, ռոմանտիզմի որոշ տարրերով՝ Պ. Ադամյանի, Սիրանույշի, Վ. Փափազյանի և ուր. արվ-ում։

Երաժշտության մեջ Ռ-ի միտումներ երևան են եկել Վերածննդի դարաշրջանում։ Ռեալիստ. երկերի գլուխգործոցներ են ստեղծել Մ. Պ. Մուսորգսկին, Ա. Պ. Բորոդինը, մասամբ՝ Պ. Ի. Չայկովսկին, Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովը և ուր.։ Ռ. որպես ստեղծագործ. մեթոդ հայ երաժշտության մեջ կիրառել է Կոմիտասը։

Կերպարվեստում Ռ. արտահայտվել է արվեստագետների (Ժ. Բ. Ս. Շարդեն, Ժ. Բ. Գրյոզ, Ժ. Ա. Հուդոն, Ու. Հոգարթ և ուր.) այն գործերում, որտեղ առավել կարևորված են հասարակ մարդկանց առօրյան, անհատ. բնավորությունները, հաս. բարքերի երգիծ. պատկերումը։ Հայկ. գեղանկարչության մեջ Ռ. տարաբնույթ երանգավորումներով դրսևորվել է Հ. Հովսեփյանի, Գ. Բաշինջաղյանի, Վ. Սուրենյանցի, Ե. Թադևոսյանի, Փ. Թերլեմեզյանի, գրաֆիկայում՝ Է. Շահինի, քանդ-յան մեջ՝ Ա. Տեր-Մարությանի, Մ. Միքայելյանի դիմապատկերներում, կոմպոզիցիաներում, բնանկարներում ևն։

ՌԵԱԿՏԻՎ ԱՐԿ, թռիչքում սովորաբար չկառավարվող արկ, որն օգտագործում են ժամանակակից վերգետնյա, ավիացիոն և ծով. համազարկ. կրակով ռեակտիվ. համակարգերում։ Թիրախին հասնում է *ռեակտիվ շարժիչի* քարշի հաշվին։ Արկի տրամաչափը՝ մինչև 375 *մմ*։

ՌԵԱԿՏԻՎ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ, մեծություն, որ բնորոշում է շղթայի էլ. ունակության և ինդուկտիվության դիմադրությունը փոփոխ. հոսանքին։ Ինդուկտիվ և ունակային տարրերի հաջորդ. միացման շղթայի սինուսոիդ. հոսանքի Ռ. դ.՝ $\chi = \omega L - 1/\omega C$, որտեղ ω-ն հոսանքի անկյուն. հաճախությունն է, L-ը և C-ն՝ ինդուկտիվությունն ու ունակությունը։ Չափվում է *Օհմ*-երով։

ՌԵԱԿՏԻՎ ՋԵՆՔ, մարտավար. զենքի տեսակ, որտեղ թիրախը խոցելու համար օգտագործվում է ***ռեակտիվ արկը***։ Ռ. զ. են վերգետնյա, ավիացիոն և ծով. համազարկ. կրակի ռեակտիվ միջոցները և ռեակտիվ նռնականետները։

ՌԵԱԿՏԻՎ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ, մեծություն, որ բնութագրում է էլեկտրամագնիս. դաշտի էներգիայի տատանումներով ստեղծված բեռնվածություններն էլեկտրատեխ. սարքերում։ Սինուսոիդ. հոսանքի համար՝ $Q = UI \cdot \sin\varphi$, որտեղ I-ն գործող հոսանքն է, U-ն՝ լարվածությունը, φ-ն՝ նրանց միջև ֆազերի շեղման անկյունը։

ՌԵԱԿՏԻՎ ՀՐԵՏԱՆԱՅԻՆ ՋԵՆՔ, հրետան. զենքի տեսակ, որի խոցման միջոցներն արձակվում են հենց արկի վրա տեղադրված շարժիչի ***ռեակտիվ բարշուժի*** հաշվին։ Ժամանակակից Ռ. հ. զ-ի դասին են պատկանում համազարկ. կրակի վերգետնյա (հակառակորդի կենդանի ուժի, կրակի միջոցների և պաշտպ. կառույցների ոչնչացման համար), ավիացիոն (մերձ. օդ. մարտի ժամանակ և վերգետնյա նպատակակետերի խոցման համար) և ծով. (վերջոյա նավերի վրա տեղադրված հականավ. զենք) ռեակտիվ համակարգերը։

ՌԵԱԿՏԻՎ ՀՐԵՏԱՆԻ, հրետանու տեսակ. ժամանակակից Ռ. հ-ներն ունեն մինչև 50 ուղղորդիչ փողեր՝ մինչև 45 *կմ* հեռահարության։ 1-ին Ռ. հ-ները ստեղծվել են ԽՍՀՄ-ում 1930-ական թթ-ին, լայնորեն կիրառվել ՀՄՊ-ի ժամանակ և նրանից հետո։

ՌԵԱԿՏԻՎ ՇԱՐԺԻՉ, ուղիղ հակազդեցության շարժիչ, քարշուժն ստեղծվում է նրանից արտանետվող բանող մարմնի հակազդեցության հաշվին։ Ստորաբաժանվում են օդառեակտիվ և հրթիռ. շարժիչների։

ՌԵԱԿՏԻՎ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹ, ավիացիոն օդառեակտիվ շարժիչների հիմն. վառելանյութ։ Առավել տարածվածը նավթի ուղղակի թորմամբ ստացվող, ջրամաքրված կերոսինն է։

ՌԵԱԿՏԻՎ ՔԱՐՇՈՒԺ, **ռեակտիվ ուժ**, ռեակտիվ շարժիչի ծայրափողակից արտանետվող բանող մարմնի (գազի, օդի, ջրի ևն) շիթի հակազդեցության (հետհարվածի) ուժը։ Ուղղված է բանող մարմնի հոսքին հակառակ ուղղությամբ։

ՌԵԱԿՏԻՎ ՆԵՐ ՔԻՄԻԱԿԱՆ, **ռեագենտներ քիմիական**, նյութեր, որոնք օգտագործում են քիմ. վերլուծության (որակ. և քանակ.), ԳՀ փորձարար. աշխ-ների և այլ նպատակներով։ Լինում են հատուկ մաքուր («հ. մ.»), քիմիապես մաքուր («ք. մ.»), վերլուծության համար մաքուր («վ. հ. մ.») և այլ Ռ. ք.։

ՌԵԱԿՏՈՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ, բարձրավոլտ էլ. սարք (ինդուկտիվության կոճի տեսքով)։ Նախատեսված է երկար էլեկտրահաղորդիչ գծերի ունակային հաղորդականությունը չեզոքացնելու, ցանցում կարճ միացման հոսանքը սահմանափակելու և կարճ միացման դեպքում բաշխիչ սարքերի հաղորդաձողերում բավարար լարվածություն պահպանելու, ուղղիչ սարքերում հոսանքի բաբախումը հարթելու նևի համար։

ՌԵԱԿՏՈՐ-ԲԱԶՄԱՊԱՏԿԻՉ, միջուկ. ռեակտոր, որում միջուկ. վառելիքի «այրումն» ուղեկցվում է 2-րդային վառելիքի վերարտադր-յամբ։ Ռ-ր-ում միջուկ. վառելիքի (օր.՝ ^{239}Pu-ի) տրոհման ընթացքում առաջացող նեյտրոնները փոխազդում են ռեակտորում տեղադրված հումք. նյութի (օր.՝ ^{238}U-ի) հետ, որի արդյունքում առաջանում է 2-րդային միջուկ. վառելիք (^{239}Pu)։ Բրիդեր տիպի Ռ-ր-ում վերարտադրվող և այրվող վառելիքները նույն քիմ. տարրի իզոտոպներն են (օր.՝ այրվում է ^{235}U, վերարտադրվում՝ ^{233}U), ռեակտոր-կոնվերտոր տիպի Ռ-ր-ում՝ տարբեր քիմ. տարրերի նուկլիդները (օր.՝ այրվում է ^{235}U, վերարտադրվում՝ ^{239}Pu)։

ՌԵԱԿՑԻԱՆԵՐ ՔԻՄԻԱԿԱՆ (< ***ռև***... և actio – գործողություն), մեկ կամ մի քանի նյութերի՝ ելանյութերի փոխարկումն այլ բաղադրության, կառուցվածքի և քիմ. հատկություններ ունեցող նյութերի՝ վերջնանյութերի։ Իրականանում է ***զանգվածի պահպանման օրենքին*** համապատասխան։ Բնութագրվում են մասնակցող նյութերի քանակաչափ. հարաբերակցություններով, փոխարկման աստիճանով, արագության և հավասարակշռության հաստատուններով, ակտիվացման էներգիայով, ջերմ. էֆեկտով։ Դասակարգվում են՝ ըստ տարր. փուլին մասնակցող մոլ-ների թվի (միա- և երկմոլ.), կինետիկ. մեխանիզմի (հաջորդ., զուգահեռ, զուգորդված), քիմ. շարժընթացի բնույթի (քայքայում, օքսիդացում, պոլիմերում ևն), քիմ. ռեակցիային մասնակցող մասնիկների տեսակների (իոն., ռադիկալ.), ռեակցող համակարգի ֆազ. վիճակի (գազա-, հեղուկա- և պինդֆազ.)։ Համասեռ Ռ. ք. ընթանում են ֆազի ծավալում, տարասեռը՝ ֆազերի բաժանման մակերևույթին։

ՌԵԱՆԻՄԱՏՈԼՈԳԻԱ (< ***ռև***..., լատ.՝ animatio – կենդանացում և ...***լոգիա***), բժշկագիտ-յան բաժին. ուսումնասիրում է մարդու օրգանիզմի կենս. կարևոր օրգանների ֆունկցիաների մարման և վերականգնման հիմն. օրինաչափությունները։ Որպես ինքնուրույն բաժին՝ ծագել է XX դ-ի կեսին։ Տես նաև ***Վերակենդանացում***։

ՌԵԲԱՆԵ (Rebane) Կառլ (1926–2007), էստոնացի ֆիզիկոս։ Էստ. ԽՍՀ ԳԱ ակադ. (1967, նախագահ՝ 1973–90-ին), ՌԳԱ ակադ. (1987)։ Սոց. աշխ. հերոս (1986)։ Աշխ-ները վերաբերում են բյուրեղների սպեկտրադիտմանը։ Կանխատեսել է և հայտնաբերել տաք լյումինեսցենցիան։

ՌԵԲԻՆԴԵՐ Պյոտր Ալեքսանդրովիչ (1898–1972), ռուս. ֆիզքիմիկոս։ ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1946)։ Սոց. աշխ. հերոս (1968)։ Աշխ-ները վերաբերում են ֆիզքիմ. մեխանիկային, մակերևութ. երևույթներին։ Զարգացրել է ՄԱՆ-երի ազդեցության մոլ. մեխանիզմի մասին պատկերացումը, մշակել է դրանց կիրառության հիմունքները։ ԽՍՀՄ Պետ. մրց. (1942)։

ՌԵԲԻՆԴԵՐԻ ԷՖԵԿՏ, պինդ նյութերի ամրության նվազման երևույթն ադսորբցիոն-ակտիվ միջավայրերում (ՄԱՆ-երի լուծույթներ, էլեկտրոլիտներ, աղերի հալույթներ ևն)։ Բացահայտել է Պ. Ա. ***Ռեբինդերը*** 1928-ին։ Օգտագործվում է

նյութերի մանրացման, դիսպերսման, կտրումով և ճնշման տակ մշակման և այլ դեպքերում:

ՌԵԲՐՈՎ, Իվան Իվանովիչ (ծ. թ. անհտ–1666), ռուս ճանապարհորդ, Տոբոլի կազակ: 1633–36-ին կազակ. ջոկատը Ռ-ի ղեկավարությամբ հասել է Լենայի գետաբերան, հայտնագործել է Օլենյոկի ծոցն ու Օլենյոկ գետը (1634), Լապտևի ծոցը, Ինդիգիրկա գետը ու մերձակա ծովափը (1638–41): Առաջինն է նավարկել Արևելասիբիր. ծովում:

ՌԵԲՈՒՍ (լատ.՝ sed rebus – ոչ թե բառերով, այլ առարկաներով), **նկարելուկ**, նկարների, նշանների, տառերի, նրանց փոխադարձ դասավորության և պատկեր. այլ ինարքների համակցության միջոցով ծածկագրված բառեր կամ արտահայտություններ, որոնք ենթակա են վերծանման: Լինում են պատկեր., տառապատկեր., «գումարած-հանած» և այլ տեսակների: Նպաստում են երեխաների տրամաբ-յան զարգացմանը:

ՌԵԳԱՏԱ (իտալ.՝ regata, riga – շարք, գիծ), մարզ. մրցարշավ. մրցում՝ թիա-, առագաստա-, շարժիչանավակներով:

ՌԵԳԲԻ (անգլ. ՝ regby), թիմ. մարզախաղ (դաս. Ռ-ում՝ թիմում՝ 15 խաղացող)՝ ձվաձև գնդակով, 95–100 x 65–68 *մ* չափերի դաշտում՝ H-ձև դարպասներով: Խաղի նպատակը՝ ձեռքով գնդակը միմյանց (հետ) կամ ոտքով (ցանկացած ուղղությամբ) փոխանցելով հակառակորդի դարպասի գծից այն կողմ գցելն է, կամ ոտքով գոլ խփելը՝ այնպես, որ այն անցնի դարպասաձողի վերադրակի վերևով: 1-ին մրցումներն անցկացվել են Անգլիայի Ռեգբի ք-ում (այստեղից՝ անվանումը): Օլիմպ. խաղերի ծրագրում էր 1900, 1908, 1920–24-ին: 2016-ին ՄՕԿ-ը որոշել է այն վերստին ներառել խաղերի ծրագրում: Ռ-ի միջազգ. միությանն անդամակցում է 100 երկիր (2010):

ՌԵԳԵՆԵՐԱՑԻՈՒՄ (ուշ լատ.՝ regeneratio – վերածնունդ, վերականգնում) (կենսբ.), կորցրած կամ վնասված օրգանների և հյուսվածքների, նաև ամբողջ օրգանիզմի ու նրա մասերի վերականգնումը: Մեծ մասամբ բնորոշ է բույսերին և անողնաշար կենդանիներին, մասամբ՝ ողնաշարավորներին:

ՌԵԳԵՆՍԲՈՒՐԳ (Regensburg), ք. Գերմանիայի Բավարիա երկրամասում, Հվինգստ Դանուբի ափին: Բն.՝ 131 հզ. (2007): Հիմնադրվել է I դ-ում հինկելտ. բնակավայրի տեղում՝ որպես հռոմ. ճամբար: Կան ռոման. և գոթ. ոճերի եկեղեցիներ, քաղաք. պատրիկների տներ (VIII–XII դդ.), գոթ. տաճար (XIII–XVI դդ.), հին ռատուշա (XIV դ.): Ռ-ի հին մասը Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՌԵԳԵՆՏՈՒԹՅՈՒՆ (լատ.՝ regens – կառավարող բառից), միապետ. երկրներում կոլեգիալ (ռեգենտ. խորհուրդ) կամ միանձնյա (ռեգենտ) կերպով միապետի փոխարեն (օր.՝ գահի թափուր մնալու, միապետի անչափահասության, շարունակ. հիվանդության, անաշխատունակության և այլ պարագաներում) ժամանակավորապես իրականացնում է պետության կառավարումը:

ՌԵԳԹԱՅՄ (անգլ.՝ ragtime, < rag – հատված և time – ժամանակ, տեմպ, տակտ), 1. ամերիկացի նեգրերի քաղաք. պարային-կենցաղ. երաժշտության ձև: Տարածվել է XIX դ-ի 2-րդ կեսին: 2. Ռ-ի ռիթմ. ձևի վրա հիմնված ամերիկ. սալոն. և պարահանդես. պար: Երաժշտ. չափը՝ 2/4: Ազդել է վաղ շրջանի ջազի և 1910–20-ական թթ-ի պար. մշակույթի վրա: Ռ-ից են առաջացել թուսթեփ, ուանսթեփ, ֆոքստրոտ և այլ պարեր:

ՌԵԳԻՈՄՈՆՏԱՆ (լատ.՝ Regiomontanus, Յոնիգսբերգցի, իսկական անունը՝ Յոհան Մյուլլեր, Müller, 1436–1476), գերմանացի աստղագետ-մաթեմատիկոս: Եվրոպայի առաջին աստղադիտարանների հիմնադիրներից (Նյուրնբերգ, 1471): 1-ին տպագիր աստղ. աղյուսակների (1474) հեղինակը, որոնցից օգտվել են *Վասկո դա Գաման* և Ք. *Կոլումբոսը*:

ՌԵԳԻՍՏԱՆ (Էլ-Ռեգիստան, Ուրեկյան) Հարոլդ Գաբրիելի (1924–1999), ռուսագիր բանաստեղծ, թարգմանիչ: Գաբրիել *Էլ-Ռեգիստանի* որդին: Հեղինակ է «Պարտքի ձայնը» (1972), «Գետը» (1975), «Երկրային ճանապարհ» (1980), «Ակնթարթ և հավերժություն» (1981, բոլորը՝ ռուս.), «Առաջին տերևաթափ» (1971), «Աստղերը ձյան մեջ» (1982, երկուսն էլ՝ հայ.) բանաստեղծությունների ու պոեմների ժող-ների, նաև 300-ից ավելի երգերի տեքստերի: Ռուս. է թարգմանել հայ հեղինակների գործերից:

ՌԽՖՍՀ ԳՄ 1-ին (1980), ՀԳՄ Ե. Չարենցի անվ. (1982) մրց-ներ:

ՌԵԳԻՍՏԱՆ, 1. անապատ Աֆղանստանի հվ-ում: Տարածքը՝ 40 հզ. *կմ*^{2}: Բարձր.՝ 800–1500 *մ*: Կան շարժվող ավազների խոշոր զանգվածներ: 2. Հանդիսության հրապարակների անվանումը Միջին Արևելքի քաղաքներում:

ՌԵԳԼԱՄԵՆՏ (լեհ.՝ reglament, ֆրանս.՝ reglement, < regle – կանոն), 1. կանոնների ամբողջություն, որով որոշվում է պետ. մարմինների, հիմնարկների, կազմ-յունների աշխ-ի կարգը: 2. Ներկայացուցչ. մարմինների նիստերի, ժողովների, նստաշրջանների և համագումարների վարելու կարգը: 3. Միջազգ. վեհա- և խորհրդաժողովների որոշ ակտերի անվանումը (օր.՝ Վիեննայի 1815-ի Ռ.): 4. Կանոնների ամբողջություն, որով կարգավորվում են պալատի կամ միապալատ խորհրդարանի ներքին կառուցվածքն ու գործունեությունը, ինչպես նաև պատգամների իրավ. դրությունը:

ՌԵԳՐԵՍԻԱ (լատ.՝ regressus – հակառակ շարժում, հետացում) (երկրբ.), ծովի ջրերի նահանջ ափերից: Պատմ. երկրբ-յան տվյալների համաձայն՝ երկրակեղևի ցամաքատիպ շրջանները բազմիցս ծածկվել են Համաշխ. օվկ-ից ներթափանցած ջրերով (տրանսգրեսիա) և նորից ազատվել ջր. ծածկոցից (Ռ.): Ռ-ի պատճառ են երկրակեղևի համապատասխան շրջանների ու գոտիների ճկումն ու իջեցումը, հորիզոն. տեղաշարժերը ևն:

ՌԵԳՈՒԼՈՒՍ, Ատյուձի, 1-ին ա. մ-յան աստղ, լուսատվությունը շուրջ 160 անգամ ավելի է Արեգակնայինից:

ՌԵԳՈՒԼՈՒՍ (Regulus, ծ. թ. անհտ–մ. թ. ա. մոտ 248), հռոմեացի զորավար: Հաղթել է կարթագենացիներին Էկնոմ հրվանդանի մոտ և Կլուպեում (256), սակայն պարտություն է կրել Տունեսի մոտ (255):

ՌԵԴ ՌԻՎԵՐ (Red River), գետ ԱՄՆ-ում և Կանադայում, Միսսիսիպիի աջ վտակը: Երկ.՝ 2050 *կմ*, ավազանը՝ 233 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 880 *մ*^{3}/*վ*: Ստորին հոսանքում բաժանվում է 2 գետաբազուկների՝ Օլդ Ռիվեր (թափվում է Միսսիսիպի) և Ատչաֆալայա (թափվում է Մեքսիկ. ծոց): Նավարկելի է Շրիվպորտ ք-ից: Կան խոշոր ջրամբար (Տեքսոմա) և ջրէկ:

ՌԵԴԳՐԵՅՎ (Redgrave) Մայքլ Սքյուդամոր (1908–1985), անգլիացի դերասան, ռեժ.: Շեքսպիրյան կերպարների լավագույն մարմնավորողներից: Նկարահանվել է «Բրաունինգի վարկածը», «Միջնորդ», «Պոեմ ծեր նավաստու մասին» և այլ կինոնկարներում: Նկարահանել է «Անտոնիո և Կլեոպատրա» (1957) ֆիլմը:

ՌԵԴԻՆԳ (Reading), ք. Մեծ Բրիտանիայում (Անգլիա)՝ Թեմզա գետի ափին: Բն.՝ 142 հզ. (2010): Էլեկտրոն. արդ-յան կենտրոն է (համակարգիչների, նրանց լրասարքավորումների, ծրագրերի մշակում և արտադր-յուն):

ՌԵԴԿԻՆ Պյոտր Գրիգորևիչ (1808–1891), ռուս պատմաբան, փիլ., մանկավարժ: Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. անդամ (1890): 1873–76-ին՝ Ս. Պետերբուրգի համալսարանի ռեկտոր: Ս. Պետերբուրգի մանկավարժ. ընկ-յան կազմակերպիչներից և 1-ին նախագահը (1859–74):

ՌԵԴԿԻՆ-ԼԱԳԵՐ, ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի (մ. թ. ա. XIII–VIII դդ.) դամբարանադաշտ ՀՀ-ում՝ Դիլիջան ք-ից 6 *կմ* հս-արլ.՝ Աղստև գետի աջ ափին: 1850-ական թթ-ին մի քանի դամբարան հայտնաբերել է ռուս ճանապարհաշինարար Ռեդկինը (որտեղից՝ հուշարձանի անվանումը): Ռ-լ-ից հայտնաբերվել են բրոնզե ու երկաթե զենքեր, զարդեր, ձիու սանձ, բազմաթիվ կավանոթներ, այլ իրեր (այդ թվում՝ մ. թ. ա. III հզ-ամյակի 2-րդ կեսի և վաղհելլենիստ. ժամանակաշրջանի): Դամբարանադաշտի մոտ պահպանվել են հին բնակավայրի հետքեր:

ՌԵԴՈՒԿՏՈՐ (< լատ.՝ reductor – վերադարձնող), 1. ատամնավոր (այդ թվում՝ որդնյակային) կամ հիդրավլիկ. փոխանցում, որը նախատեսված է անկյուն. արագություններն ու պտտող մոմենտները փոփոխելու համար: 2. Աշխ. միջավայրի ճնշումը բալոնի կամ այլ տարողության ելքի վրա իջեցնելու և հաստատուն պահելու սարք:

ՌԵԴՈՒԿՑԻԱ (կենսբ.), **հետաճում**, օրգանների չափերի փոքրացումը, կազմության պարզեցումը կամ ֆունկցիաների կորուստն անհատ. (օնտոգենեզ) կամ պատմ. (ֆիլոգենեզ) զարգացման ընթացքում: Երբեմն Ռ. են անվանում նաև օրգանի կամ հյուսվածքի լրիվ անհետացումն էվոլյուցիայի ընթացքում:

ՌԵԴՈՒԿՑԻՈՆԻԶՄ (լատ.՝ reductio), մեթոդարան. սկզբունք, ըստ որի՝ բարդ երևույթները կարող են լիովին բացատրվել առավել պարզ երևույթների հատուկ օրենքներով (օր.՝ կենսբ. երևույթները ֆիզ. և քիմ., սոցիոլոգիականը՝ կենսբ. և այլ օրենքներով, ևն): Ռ. բացարձակացնում է բարդից առավել պարզի (ռեդուկցիայի) հանգեցման սկզբունքը: Այդուհանդերձ, հիմնավորված *ռեդուկցիան* կարող է լինել արդյունավետ (օր.՝ ատոմի մոլորակ. մոդելը):

ՌԵԴՈՒՑԵՆՏՆԵՐ (լատ.՝ reducens, սեռ. հոլ.՝ reducentis – վերադարձնող, վերականգնող), մահացած օրգ. նյութեր (դիակներ, թափոններ) քայքայող և դրանք անօրգ. նյութերի փոխակերպող օրգանիզմներ (սապրոտրոֆներ), որոնք ունակ են յուրացնելու այլ օրգանիզմների (պրոդուցենտներ):

ՌԵԴՖՈՐԴ (Redford) Ռոբերտ (ծ. 1936), ամերիկացի դերասան, պրոդյուսեր: Հան-

դես է եկել թատրոնում, նկարահանվել կինոյում («Հետապնդում», «Բույչ Քեսսիդի և Սանդենս Քիդ», «Թեկնածու», «Խարդախություն», «Մեծն Գեթսբին», «Կոնդորի երեք օրը», «Այդպիսին ենք եղել մենք», «Անպարկեշտ առաջարկ» ևն): Նկարահանել է «Սովորական մարդիկ» (1980), «Միլագրո Բինֆիլդի պատերազմը» (1987), «Աոյուծներ գառների համար» (2007) և այլ ֆիլմեր:

ՌԵԶԱՆՅԵՎ Վալերի Գրիգորևիչ (ծ. 1946), ռուս մարզիկ և մարզիչ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1970), ՌԴ վ. մ. (1996): Օլիմպ. խաղերի (1972, 1976), աշխարհի և ԽՍՀՄ (1970–75), Եվրոպայի (1970, 1973–74) դաս. ըմբշամարտի (հունա-հռոմ.) չեմպիոն:

ՌԵԶԱ–ՇԱՀ ՓԱՀԼԱՎԻ (1878–1944), Իրանի շահ՝ 1925–41-ին: Փահլավիների հարստության հիմնադիրը: 1941-ի սեպտ-ին հրաժարվել է գահից՝ հօգուտ որդու՝ Մուհամմադ Ռեզա Փահլավիի և հեռացել Իրանից:

ՌԵԶԵՐՊԻՆ, ալկալոիդ, պարունակվում է ռաուվոլֆիա բույսի տարբեր տեսակներում: Ունի ԿՆՀ հանգստացնող ազդեցություն, արյան ճնշումն իջեցնող հատկություններ: Օգտագործվում է հիմնականում հիպերտոնիկ հիվանդության և հոգեկան հիվանդությունների ժամանակ:

ՌԵԶԵՐՎԱՏ (լատ.՝ reservo – պաշտպանել), 1. պահպանվող բնական տարածք: Տարբերում են՝ ըստ նշանակության (անտառ., որսորդ. ևն) և ըստ պահպանման ռեժիմի (լրիվ, մասնակի) Ռ-ներ: 2. Պահպանված արմատ. բնակչության մնացորդներին բռնի բնակեցնելու համար հատկացված տարածքներ: Գոյություն ունեն ԱՄՆ-ում, Կանադայում և Բրազիլիայում՝ հնդկացիների, Ավստրալիայում՝ Ավստրալիայի բնիկների, ՀԱՀ-ում՝ աֆրիկացիների համար:

ՌԵԶԵՐՖՈՐԴ (Rutherford) Էռնեստ (1871–1937), անգլիացի ֆիզիկոս, ռադիոակտիվության և ատոմի կառուցվածքի տեսության ստեղծողներից: Գիտ. դպրոցի հիմնադիր: ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1925): Հայտնաբերել է (1899) α և β մասնիկները և բացահայտել նրանց բնույթը, ստեղծել (1903, Ֆ. *Սոդդիի* հետ) ռադիոակտիվության տեսությունը: Առաջարկել է (1911) ատոմի կառույցի մոլորակ. մոդելը, իրականացրել (1919) 1-ին միջուկ. ռեակցիան: Կանխատեսել է (1921) *նեյտրոնի* գոյությունը, տվել է Ռ-ի բանաձևը: Նոբելյան մրց. (1908):

ՌԵԶԵՐՖՈՐԴ, *ռադիոնուկլիդի* ակտիվության արտահամակարգ. միավոր, նշանակումը՝ *Ռդ*: Կոչվել է Է. *Ռեզերֆորդի* պատվին: 1 *Ռդ* = 10^6 *տրոհում /վ*:

ՌԵԶԵՐՖՈՐԴԻՈՒՄ (Rutherfordium), Rf, տարրերի պարբեր. համակարգի IV խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 104: Ճառագայթաակտիվ է, համեմատաբար կայուն իզոտոպը 261Rf-ը (T1/2 = 65 *վ*): Կոչվել է ի պատիվ Է. *Ռեզերֆորդի*: Ստացել են (1964) խորհրդ. ֆիզիկոսները: Մինչև 1997-ը ռուս. գրկ-յան մեջ կոչվել է կուրչատովիում՝ Ku:

ՌԵԶԻԴԵՆՏ (լատ.՝ residens, սեռ. հոլ.՝ residentis – տեղում մնացող), 1. մետրոպոլիայի դիվանագիտ. ներկայացուցիչը կախյալ պետության մեջ: 2. Օտարերկրյա լրտեսության գաղտնի ղեկ.: 3. Մի երկրում մշտապես բնակվող օտարահպատակ իրավաբ. կամ ֆիզ. անձ:

ՌԵԶԻԴԵՆՑԻԱ (ուշ լատ.՝ residentia), պետության ղեկ-ի, կառ-յան, օտարերկրյա դեսպանի նստավայր:

ՌԵԶԻՍՏՈԳՐԱՖԻԱ (< լատ. resisto – դիմադրություն և ...*գրաֆ*), օրգանի անոթների՝ արյան հոսքի հանդեպ դիմադրության չափումը հատուկ սարքի (ռեզիստոգրաֆ) օգնությամբ: Կիրառվում է սիրտանոթ. համակարգի համալիր հետազոտության ժամանակ:


ՌԵԶՈՆԱՆՍ (ֆրանս.՝ resonance, լատ.՝ resono – արձագանքել), հաստատվող ստիպող. տատանումների ամպլիտուդի կտրուկ աճը, երբ արտաքին ներդաշնակ փոխազդեցության հաճախությունը մոտենում է համակարգի սեփ. տատանումների հաճախություններից մեկին:

ՌԵԶՈՆԱՆՍԱՅԻՆ ԱՐԱԳԱՑՈՒՑԻՉ, լիցքավորված մասնիկների արագացուցիչ, որտեղ մասնիկները շարժվում են արագացնող էլ. ԲՀ դաշտի փոփոխությանը համաժամ (ռեզոնանս), այսինքն՝ ԲՀ դաշտի հաճախությունը հավասար կամ պատիկ է մասնիկների ուղեծրով պտտման հաճախությանը:

ՌԵԶՈՆԱՆՍԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄ, էլեկտրամագնիս. ճառագայթում, որն առաքում է կապված լիցքերի (օր.՝ ատոմների) համակարգը, երբ նրա հաճախությունը համընկնում է գրգռող լույսի հաճախության հետ: Առավել հստակ դիտվում է Hg, Cd, Na ևնի ատոմ. գոլորշիներում:

ՌԵԶՈՆԱՆՍԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, քիմ. կառուցվածքի դաս. տեսությունը լրացնող հայեցակարգ, քիմ. կապի որոշ հատկություններ նկարագրելու եղանակ: Ռ. տ. հնարավորություն է տալիս դատելու մոլ-ի զուգաչափության, ռեակցիոնունակության, կայունության, քիմ. կապերի և կառուցվածք. տարրերի համարժեքության մասին, կռահել որոշ փորձն. հետազոտությունների արդյունքներ՝ առանց քվանտամեխ. հաշվարկների: Առաջարկել է Լ. *Պոլինգը* 1928–31-ին:

ՌԵԶՈՐՑԻՆ, մետա-երկհիդրօքսիբենզոլ, անգույն բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 111°C: Օգտագործվում է ռեզորցինամրջնալդեհիդ. խեժեր, ներկանյութեր, պոլիմերների կայունարարներ և պլաստիկարարներ, պայթուցիկ նյութեր ստանալու համար, բժշկության մեջ՝ մաշկ. հիվանդությունների բուժման համար:



ՌԵԶՅՈՎԱ Անֆիսա Անատոլևնա (ծ. 1964), ռուս մարզուհի: ԽՍՀՄ ս. վ. վ. (1987): Ձմեռ. օլիմպ. խաղերի միակ կրկնակի չեմպիոնուհին՝ 2 սպորտաձևով (1988-ին՝ դահուկ. մրցարշավ, 1992 և 1994-ին՝ բիաթլոն), աշխարհի եռակի չեմպիոն (1985, 1987, 1995)՝ դահուկ. մրցարշավ:

ՌԵԶՈՒՄ, **մակակ-ռեզուս**, մակակների ընտանիքի կապիկ: Սարմնի երկ.՝ մինչև 80, պոչինը՝ 25–30 *սմ*: Ապրում է Հվ. և Հվ-արլ. Ասիայում: Ժամանակի մեծ մասն անցկացնում են գետնին: Ռ-ները լավ լողում են, սուզվում: Օգտագործում են որպես լաբորատոր կենդանիներ:

ՌԵԶՈՒՄ-ԳՈՐԾՈՆ (Rh), *հնագույն*, որը պարունակվում է մակակ-ռեզուս կապիկի (այստեղից՝ անվանումը) և մարդու էրիթրոցիտներում: Հայտնաբերել են 1940-ին Կ. *Լանդշտեյները* և ամերիկացի գիտնական Ա. Ս. Վիները (A. S. Viner): Ըստ Ռ-գ-ի առկայության կամ բացակայության՝ մարդկանց առանձնացնում են ռեզուս-դրական (շուրջ 85 %-ը) և ռեզուս-բացաս. (շուրջ 15 %-ը) խմբերի: Ռեզուս-բացաս. անձանց ռեզուս-դրական արյուն փոխներարկելիս կամ ռեզուս-բացաս. կանանց ռեզուս-դրական պտղով հղիության դեպքում կարող են առաջանալ իմուն. բարդություններ (*նորածինների արյունալուծական հիվանդություն* ևն): Բարդությունները կանխարգելելու նպատակով ներարկում են հակառեզուս գամմա-գլոբուլին: Արյան փոխներարկման ժամանակ պարտադիր հաշվի են առնում Ռ-գ. և արյան խումբը:

ՌԵԹԻԿՈՒԼԱՅԻՆ ՀՅՈՒՍՎԱԾՔ, **ցանցաձև հյուսվածք** (լատ.՝ reticulum – ցանց), շարակց. հյուսվածքի տարատեսակ, որը կազմում է արյունաստեղծ օրգանների և լորձաթաղանթներում ավշանման կուտակումների (օր.՝ նշագեղձերի) և ատամի կակղանի (պուլպա) հիմքը: Մտնում է *ռեթիկուլոէնդոթելային* համակարգի կազմության մեջ:

ՌԵԹԻԿՈՒԼՈԷՆԴՈԹԵԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ, **մակրոֆագային համակարգ**, մարդու և ողնաշարավոր կենդանիների օրգանիզմներում պաշտպ. բջիջների ամբողջությունը: Որսում ու մարսում են բակտերիաներին և օտարածին կամ թունավոր մասնիկներին, մասնակցում են արյունաստեղծմանն ու հակամարմինների մշակմանը, նյութափոխանակությանը:

ՌԵԹԻԿՈՒԼՈՍԱՐԿՈՄԱ, չարորակ ուռուցք. առաջանում է ոսկրածուծի ցանցաձև հյուսվածքի, ավշահանգույցների, նշագեղձերի, հազվադեպ՝ ներքին օրգանների, ոսկրերի ռեթիկուլային բջիջներից: Տարածված բազմաթիվ Ռ-ները (ռեթիկուլոսարկոմատոզ) կլինիկորեն չեն տարբերվում սուր լեյկոզից:

ՌԵԺԻՄ (իրավունք), պետաիրավ. վարչաձև, պետ. իշխանության իրականացման մեթոդների և եղանակների համակցություն: Ըստ պետաիրավ. վարչաձևի՝ պետությունները կարող են լինել առաջադիմ., ժողովրդավար. և հակաժող. (ամբողջատիր. կամ տոտալիտար, ինքնակալական, ռասիստ., ֆաշիստ.):

ՌԵԺԻՍՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ, բեմադր. արվ., գեղ. տարբեր արժեքները (*դրամատուրգիա*, *ներաասանական արվեստ*, *բեմանկարչություն*, *երաժշտություն*) միավորելու, որպես տարածաժամանակ. ամբողջություն համադրելու և դրամատուրգ. երկը բեմ. կամ էկրան. արժեքի վերածելու արվ-ը, որի կրողը ռեժ-ն է: Հայ իրականության մեջ Ռ. ա. սկզբնավորվել է 1860-ական թթ-ին՝ պրոֆեսիոնալ դրամատիկ. թատրոնի կազմավորումով: Տես նաև *Թատրոն*:

ՌԵԼԱՔՍԱՅԻԱ, (լատ.՝ relaxatio – թուլացում), 1. (ֆիզիոլոգ.) կմախք. մկանունքի տոնուսի թուլացումը կամ խիստ աննկումը՝ մինչև լրիվ անշարժացում: Կարող է առաջանալ որպես ախտարան. վիճակ: Արհեստ. Ռ. կատարում են միոռելաքսանտներով: 2. Թերմոդինամիկ. հավասարակշռության հաստատման շարժընթաց (լրիվ կամ մասնակի) մեծ թվով մասնիկներից կազմված ֆիզ. համակարգում:

ՌԵԼԱՔՍԻՆ (լատ.՝ relaxo – թուլացնել), մարդու և կաթնասունների հորմոն. մշակվում է ձվարաններում և ընկերքում: Նպաստում է կոնքի կապանների թուլացմանը և դրանով՝ ծննդաբերության բնականոն ընթացքին: Քիմ. բնույթով պոլիպեպտիդ է:

ՌԵԼԵ (ֆրանս.՝ relais – փոխել), արտաքին ազդանշանով էլ. շղթաների ավտոմատ փոխարկման սարք: Լինում են ջերմ., մեխ., էլ., օպտիկ., ձայն. Ռ-ներ: Օգտագործվում են ավտոմատ կառավարման, վերահսկման, ազդանշանման, պաշտպ-յան, փոխարկման համակարգերում:

ՌԵԼԵ ԺԱՄԱՆԱԿԻ, սարք, որի հպակնե-րը միանում (կամ անջատվում) են կառա-վարման ազդանշանի ստացումից որոշ ժամանակ անց: Հապաղման մեծությունը կարելի է կարգավորել՝ ռելեային տարրի վրա ներգործող ֆիզ. մեծության արա-գության փոփոխության կարգավորմամբ: Օգտագործվում է հիմնականում ավտո-մատիկայում, լուսավորության մեջ և այլ ոլորտներում:

ՌԵԼԵԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ էլեկտրական համակարգերի, 1 կամ մի քանի *ռելեից* կազմված և համակարգի տարբեր տարրերի աշխ-ի բնականոն ռեժիմի խախտմանը (օր.՝ կարճ միաց-ման, գերլարվածության) արձագանքե-լու, դրանք ավտոմատ հայտնաբերելու և վնասված տեղամասն անջատելու կամ հոսանքի այլ համակարգի միացնելու հրահանգ տալու ունակ սարքերի համա-խումբ (առանձին սարք):

ՌԵԼԵԻ (Rayleigh) Ջոն Ուիլյամ լորդ (1842–1919), անգլիացի ֆիզիկոս, տատա-նումների տեսության հիմնադիրներից: Լոնդոնի թագավոր. ընկ-յան (1873, նա-խագահ՝ 1905–08-ին), Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. (1896) անդամ: Կավենդիշի լաբորատորիայի տնօրեն (1879–84): Աշխ-ները վերաբերում են ձայնագիտ-յանը, լույսի մոլ. ցրմանը (*Ռելեյի օրենք*): Հայտնաբերել է *արգոնը* (1894, Ու. *Ռամ-զայի* հետ): Բացահայտել է *Ռելեյ–Ջինսի օրենքը*, կանխատեսել *Ռելեյի ալիքները*, մշակել նմանության չափանիշ (Ռ-ի թիվ) և պատրաստել լույսի ինտենսիվության չափման սարք (Ռ-ի սկավառակ): Նոբել-յան մրց. (1904):

ՌԵԼԵԻ ԱԼԻՔՆԵՐ, առաձգ. գրգռում-ներ, որոնք տարածվում են պինդ մարմնի մակերևույթով և մարում խորանալիս: Ռ. ա-ի փուլ. արագությունն ուղղված է մա-կերևույթին զուգահեռ, իսկ միջավայրի մասնիկների տեղաշարժման վեկտորն ունի մակերևույթով և նրան ուղղահայաց ուղղված բաղադրիչներ: Ռ. ա-ի գոյութ-յունը կանխատեսել է Ջ. Ու. *Ռելեյը* (1885): Ռ. ա-ի օրինակ են երկրաշարժի ժամա-նակ երկրի մակերևույթին առաջացող ալիքները:

ՌԵԼԵԻ ՕՐԵՆՔ, 1. **լույսի ցրման օրենք**, լույսի առաձգ. ցրման ինտենսիվությունը համեմատական է λ^{-4}-ին (λ-ն լուս. ալիքի երկ-յունն է): Դրա շնորհիվ երկնագույն և մանուշակագույն ճառագայթները ցրվում են ավելի ուժեղ, քան կարմիրները (դրա-նով է պայմանավորված երկնքի կապույտ գույնը): Հաստատել է Ջ. Ու. *Ռելեյը* (1871): 2. **Ռ. օ. մագնիսացման**, սահմանում է ֆեռոմագնիսի մագնիսացման կախումն արտաքին մագնիս. դաշտի լարվածութ-յունից՝ թույլ դաշտերում: Փորձով ստացել է Ջ. Ու. Ռելեյը (1887):

ՌԵԼԵԻ–ՋԻՆՍԻ ՕՐԵՆՔ ճառագայթման, բացարձակ սև մարմնի ճառագայթման սպեկտրում էներգիայի բաշխման կա-խումն է ջերմաստիճանից: Պլանկի ճա-ռագայթման օրենքի մասնավոր դեպք է՝ ճառագայթման համեմատաբար փոքր հաճախությունների համար: Տարբեր եղանակներով արտածել են Ջ. Ու. *Ռելեյը* (1908) և Ջ. *Ջինսը* (1905–09):

ՌԵԼԻ (Raleigh) Ուոլտեր (1552–1618), անգ-լիացի ծովագնաց, ծովահեն. արշավների կազմակերպիչ, բանաստեղծ, դրամա-տուրգ, պատմաբան: Հս. Ամերիկայում փորձել է հիմնել անգլ. գաղութ, որը չի հաջողվել: Մասնակցել է իսպ. «Անպար-տելի Արմադայի» ջախջախմանը (1588): Մեղադրվել է Յակոբ I-ի դեմ դավադրութ-յան համար և բանտարկվել է Թաուերում (1604–16): Մահապատժի է ենթարկվել:

ՌԵԼԻԵՖ (ֆրանս.՝ relief, < լատ. relevo – բարձրացնել), ցամաքի մակերևույթի, օվկ-ների ու ծովերի հատակի ուրվագծե-րով, չափերով, ծագմամբ, հասակով և զարգացման պատմությամբ բազմատե-սակ անհարթությունների ամբողջութ-յունը: Ռ. բաղկացած է դրական կամ ուռուցիկ (բարձունքներ, լեռներ ևն) և բացաս. կամ գոգավոր (գոգավորություն-ներ, գետահովիտներ ևն) ձևերից, որոնք առաջանում են արտածին և ներծին շար-ժընթացների միաժամանակյա երկարա-տև փոխներգործությունից և բարդացած են 2-րդային անհարթություններով: Ռ-ի ուսումնասիրությամբ զբաղվում է երկրա-ձևաբանությունը:

ՌԵԼԻԿՏՆԵՐ, **մնացուկներ** (կենսբ.), բույ-սերի և կենդանիների տեսակներ, որոնք տվյալ երկրի կամ մարզի բուսածածկույ-թի մեջ են՝ որպես անցյալ դարաշրջանի ֆաունայի և ֆլորայի վերապրուկներ: Դրանք հաճախ գոյության ժամանակա-կից պայմաններին չեն համապատաս-խանում: Օր.՝ Արկտիկայում անտառ. Ռ. (լինենա, հապալասենի), որոնք հետսառ-ցային ժամանակաշրջանում են շարժվել դեպի հս և այնտեղ պահպանվել են տունդրայի շրջապատման մեջ: Նեո-գենային Ռ.՝ մշկամուկը, պահպանվել է միայն ՌԴ Վոլգայի և Ուրալի ավազան-ներում (նեոգենից սկսած):

ՌԵԼՅԱՏԻՎԻԶՄ (լատ.՝ relativus – հարա-բերական), փիլ. իմացաբան. ըմբռնում. ընդունում է իմացության հարաբերա-կանությունը, պայմանականությունն ու սուբյեկտիվությունը, բացարձակ էթիկ. նորմերի և կանոնների ժխտումը: Իմա-ցաբանության մեջ Ռ. հաճախ կարող է հանգեցնել *ագնոստիցիզմին*:

ՌԵԼՅԱՏԻՎԻՍՏԱԿԱՆ ԱՍՏՂԱՖԻԶԻ-ԿԱ, *աստղաֆիզիկայի* բաժին, որը հա-րաբերականության ընդհ. տեսության (Ա. Էյնշտեյնի ձգողականության տեսություն) հիման վրա ուսումնասիրում է գերխիտ տիեզ. մարմինները՝ նեյտրոն. աստղերն ու սև խոռոչները:

ՌԵԼՅԱՏԻՎԻՍՏԱԿԱՆ ԱՐԱԳՈՒԹ-ՅՈՒՆ, լույսի արագությանը մոտ արա-գությունը: Ռ. ա-յամբ շարժվող մասնիկ-ները կոչվում են ռելյատիվիստ.:

ՌԵԼՅԱՏԻՎԻՍՏԱԿԱՆ ԷՖԵԿՏՆԵՐ, ֆիզ. երևույթներ, որոնք ի հայտ են գալիս մար-մինների (մասնիկների)՝ լույսի արագութ-յան հետ համեմատելի արագությունների դեպքում, ինչպես նաև ուժեղ *ձգողական դաշտերում*:

ՌԵԼՅԱՏԻՎԻՍՏԱԿԱՆ ԻՆՎԱՐԻԱՆ-ՏՈՒԹՅՈՒՆ, *Լորենց-ինվարիանտութ-յուն*, ֆիզ. օրենքների անփոփոխելիութ-յունը *Լորենցի ձևափոխությունների* նկատմամբ. բխում է հարաբերականութ-յան տեսությունից:

ՌԵԼՅԱՏԻՎԻՍՏԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԿԱ, դիտարկում է մարմինների (մասնիկ-ների) մեխ. շարժման դաս. (ոչ քվանտ.) օրենքները՝ լույսի արագության հետ համեմատելի արագությունների դեպ-քում: Հիմնված է հարաբերականության հատուկ տեսության վրա:

ՌԵԼՅԱՏԻՎԻՍՏԱԿԱՆ ՊԼԱԶՄԱ, *պլազ-մա*, որում որևէ տեսակի մասնիկների քաոս. շարժման միջին էներգիան գերա-զանցում է այդ մասնիկների հանգստի էներգիային: Այդպիսիք են սովորաբար էլեկտրոնները: Ռ. պ-ի լենգմյուրյան տատանման հաճախությունը կախված է էլեկտրոնների ջերմաստիճանից, զույգ բախումները հանգեցնում են նոր մաս-նիկների առաջացման:

ՌԵԼՅԱՏԻՎԻՍՏԱԿԱՆ ՏԻԵԶԵՐԱ-ԿԱՆՈՒԹՅՈՒՆ, անկայուն Տիեզերքի տեսություն, որն ամբողջ. Տիեզերքի կա-ռուցվածքն ու էվոլյուցիան դիտարկում է հարաբերականության ընդհ. տեսության հիման վրա:

«ՌԵԼՄԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ», ՀՄՊ-ի ժա-մանակ՝ 1943-ի օգոստ–սեպտ-ին խորհրդ. պարտիզանների իրականացրած խոշոր ռազմագործողություն, որի արդյունքում թշնամու օկուպացրած Լենինգրադի, Կա-լինինի, Սմոլենսկի ու Օռլովի մարզերի և Բելառուսի ու Ուկրաինայի տարածքնե-րում շարքից հանվել է երկթղ. հաղոր-դակցության համակարգը:

ՌԵԼՍԵՐ (անգլ.՝ rails), հատուկ հատույթով պողպատե հեծաններ, որոնք տեղա-դրվում են փայտե կոճերի վրա՝ կազմելով ռելսային աղուր՝ երկթղ. տրանսպորտի (գնացք, մետրոպոլիտեն, տրամվայ, հան-քարան. վագոնիկ, ամբարձիչ կռունկ ևն) շարժման համար: Օգտագործում են նաև միառելս ճանապարհներ ևն:

ՌԵԿԱՊԻՏՈՒԼՅԱՑԻԱ (լատ.՝ recapitulatio – կրկնություն) (կենսբ.), հեռավոր նախ-նիների հատկանիշների կրկնությունը ժամանակակից օրգանիզմների անհատ. զարգացման մեջ (օր.՝ ցամաք. ողնա-շարավորների սաղմում խռիկ. ճեղքերի առաջացումը, որոնք բնորոշ են նրանց ձկնանման նախնիներին): Տես նաև *Կեն-սագենետիկական օրենք*:

ՌԵԿԼԱՄԱՑԻԱ (լատ.՝ reclamatio – բարձ-րացույն առարկություն, անհավանութ-յուն), քաղաքաց. իրավունքում՝ գնորդի (պատվիրատուի) պահանջները վաճա-ռողին (մատակարարին, կապալառուին)՝ ապրանքի անհամապատասխան որակի կապակցությամբ, թերությունների վե-րացման, գնի իջեցման, վնասների փոխ-հատուցման պահանջ:

ՌԵԿԼՅՈՒ (Reclus) Ժան-Ժակ Էլիզե (1830–1905), ֆրանսիացի աշխարհագետ, սո-ցիոլոգ: «Երկիրը և մարդիկ: Ընդհանուր աշխարհագրություն» (հ. 1–19, 1876–94) հիմնարար աշխ-յան մեջ փորձել է տալ մարդկության զարգացման ընդհ. պատ-կերն ու երկրների նկարագրությունը:

ՌԵԿՈՄԲԻՆԱՑԻԱ (< *ռե*... և լատ.՝ combinatio – միացում) (գենետիկ.), գե-ների նոր զուգորդությունների ի հայտ գալը, որոնք հանգեցնում են սերունդների հատկանիշների նոր զուգորդությունների:

ՌԵԿՈՆՎԵՐՍԻԱ (< *ռե*... և լատ.՝ conversio – վերադարձ, շրջադարձ), պատերազմից հետո ռազմ. արդ-յան և տնտ. այլ ճյու-ղերի փոխադրումը՝ խաղաղ ժամանակի արտադր-յան պահանջներին համապա-տասխան:

ՌԵԿՈՆՔԻՍՏԱ (իսպ.՝ Reconquista, < reconquistar – հետ նվաճել), արաբ-

նների զավթած տարածքների՝ Պիրենեյան թ–կղզու ժողդ–ների հետնվաճումը VIII–XV դդ–ում: Սկսվել է 718–ին, երբ Կովադոնգի (Իսպանիայի հս–ում) ճակատամարտում տեղ. աշխարհազորը ջախջախել է արաբների ջոկատը և կանգնեցրել նրանց առաջխաղացումը: Վճռական դեր է ունեցել 1212–ի հուլիսի 16–ին Կաստիլիայի, Արագոնի և Նավառայի միացյալ ուժերի հաղթանակն Ալմոնադների զորքերի նկատմամբ: 1492–ին ընկել է արաբների վերջին հենարանը՝ Գրանադայի ամիրությունը:

ՌԵԿՎԻԶԻՏՆԵՐ (լատ.՝ requisitum – պահանջվող, անհրաժեշտ) (իրավաբ.), անհրաժեշտ տվյալներ, որոնք պետք է պարունակի փաստաթուղթը (մուրհակ, պայմանագիր, վճարագիր) իրավ. ուժ ստանալու համար (օր.՝ փաստաթղթի անվանումը, վճարման ենթակա գումարը, վճարողի անվանումը):

ՌԵԿՏՈՐ (լատ.՝ rector – կառավարող, ղեկավարող), բուհի ղեկ.: Վերածնության դարաշրջանում Ռ. են կոչվել ուսուցչապետները և բազմադասարան դպրոցների վարիչները: Ֆրանսիայում Ռ. է կոչվում նաև ուս. շրջան («ակադեմիա») գլխավորող անձը:

ՌԵԿՐԵԱՑԻԱ (լատ.՝ recreatio – վերականգնում), առողջության և աշխատունակության վերականգնումը՝ բնության գրկում հանգստանալու, շրջագայության կամ հետաքրքիր վայրեր հաճախելու միջոցով:

ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, աշխարհագր. գիտ. ուղղություն. ուսումնասիրում է տարածք. օրինաչափություններն ու մարդկանց գործունեության առանձնահատկությունները՝ ուղղված հոգևոր և մտավոր ուժերի վերականգնմանն ու զարգացմանը (հանգիստ, զբոսաշրջություն ևն):

ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑՈՒՄ ԼԱՆԴՇԱՖՏԻ (< *ռև...* և միջնադար. լատ.՝ cultivo – մշակել, աճեցնել), նախորդող տնտ. գործունեության (օգտ. հանածոների արդյունահանում, շին–յուն, անտառի վերացում ևն) հետևանքով խախտված լանդշաֆտի լրիվ կամ մասնակի վերականգնում: Ներառում է հանքափորվածքների տեղում հողի հարթեցումը, անտառապատումը, զբոսայգիների և լճակների ստեղծումը ևն:

ՌԵԿՈՒՐԵՆՏ ԲԱՆԱՁԵՎ, **վերածման բանաձև**, միմյանց է կապում $\{u_n\}$ ($n = 1, 2, ...$) որոշակի հաջորդականության հաջորդ. անդամների՝ u_k, u_{k-n} ... u_{kp} ($k \geq p + 1$) արժեքները. $u_k = f(K, u_{k-1}, ... u_{k-p})$ Ռ. բ. հնարավորություն է տալիս քայլ առ քայլ որոշելու հաջորդականության ցանկացած անդամ, եթե հայտնի են նրա առաջին p անդամները՝ u_1, u_2 ..., u_p: Օր.՝ թվար. պրոգրեսիան $u_n = a + nb$, $n = 0, 1, 2 ...$ կարող է տրվել Ռ. բ–ով՝ $u_{n+1} = u_n + b$, $n = 0, 1, 2, ...$ և $u_o = a$ արժեքով:

ՌԵՀԱՆ (Ocimum), ***խուլեղինջազգիների*** ընտանիքի խոտաբույսերի կամ կիսաթփերի ցեղ: Հայրենիքը Հվ. Ասիան է: Հայտնի է 50 տեսակ: ՀՀ բոլոր մարզերում տարածված է մշակովի Ռ.: Միամյա է, ջերմասեր, լավ է աճում հումուսով հարուստ, թեթև կավավազ. հողերում: Օգտագործվում է կենցաղում, բժշկության մեջ:

ՌԵՀԱՆՈՒԻՐՑ (անգլ.՝ Clinopodium), **վայրի ռեհան**, ***խուլեղինջազգիների*** ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 10 տեսակ, ՀՀ–ում՝ 2 (վայրի և ստվերային): 1–ինը տարածված է բոլոր, 2–րդը՝ Սյունիքի մարզում: Աճում է անտառներում, անտառեզրերին, թփուտներում: Պատրաստուկներն օգտագործվում են որպես հակաբորբոք. միջոց: Համեմունք., ներկատու, մեղրատու բույս է:

ՌԵՄԱԿ (Remak) Ռոբերտ (1815–1865), գերմանացի նյարդաբան: Էլեկտրաախտորոշման և էլեկտրաբուժության հիմնադիրներից: Նկարագրել է բջիջներում նյարդաթելիկները (1847), ներքին օրգաններում (այդ թվում՝ սրտում)՝ առաջին հանգույցները:

ՌԵՄԱՐԿ (Remarque, Remark) Էրիխ Մարիա (1898–1970), գերմանացի գրող: 1931–ից՝ վտարանդի: Մասնակցել է ԱՀՊ–ին, որի անմարդկային էությունը պատկերել է «Արևմտյան ֆրոնտում անփոփոխ է» (1929, հայ.՝ 1932) վեպում: Հեղինակ է նաև «Երեք ընկեր» (1938, հայ.՝ 1972), «Հաղթական կամար» (1946, հայ.՝ 1973) հակաֆաշիստ. թեմայով, ԵՀՊ–ի մասին «Ապրելու ժամանակն ու մեռնելու ժամանակը» (1954, հայ.՝ 1963), երգիծ. «Սև կոթողը» (1956) և այլ վեպերի:

ՌԵՄԲՈ (Rimbaud) Արթյուր (1854–1891), ֆրանսիացի բանաստեղծ: Հեղինակ է «Գինովցած նավը» (1871) բալլադի, «Մեկ ամառ դժոխքում» (1873), «Ժաննա Մարիի ձեռքերը» (1871), «Վերջին բանաստեղծություններ» (1872), «Պայծառացումներ» (1872–73, հրտ.՝ 1886) բանաստեղծությունների և արձակ գործերի ժող–ների: Հայ. հրատարակվել են «Բանաստեղծություններ» (1991, 2009), «Պայծառատեսի նամակները» (2012) ժող–ները:

ՌԵՄԲՐԱՆԴ Հարմենս վան Ռեյն (Rembrandt Harmensz van Rijn, 1606–1669), հոլանդացի գեղանկարիչ, գծանկարիչ, օֆորտիստ: Խոր հոգեբ. բնութագրումները զուգակցելով գեղանկարչ. բացառիկ վարպետության հետ, հիմնվելով լուսաստվեր. էֆեկտի վրա՝ ստեղծել է դիմանկարներ, նաև խմբային («Գիշերային դետք», 1642), կրոն. («Սուրբ ընտանիք», 1645), դից. («Դանայա», 1636) տեսարաններ: 1660–ական թթ–ին են վերագրվում հոգեբ. կառուցվածքով առավել բարդ կրոն. («Անառակ որդու վերադարձը», մոտ 1668–69), պատմ. («Հուլիոս Ցիվիլիսի դավադրությունը», 1661) կոմպոզիցիաները և դիմանկարները («Դատապաշտպանները», 1662): Ռ–ի ուշ շրջանի ստեղծագործություններում ազատ գեղանկարչությունը, վիրտուոզ գրաֆիկան (գծանկարներ, օֆորտներ) ձեռք են բերել յուրահատուկ զգացմունք. արտահայտչականություն, լուսաստվերը դարձել է հոգեբ. բախումների բացահայտման հզոր միջոց:

ՌԵՄԵԶՈՎ Սեմյոն Ուլյանովիչ (1642–1720–ից հետո), ռուս. քարտեզագիր և պատմաբան: Կազմել է 23 քարտեզից բաղկացած առաջին ռուս. աշխարհագր. ատլասը՝ «Սիբիրի գծանկարային գիրքը» (1699–1701): Հեղինակ է Սիբիրի պատմության մասին աշխ–ների (Ռեմեզովյան տարեգրություն, XVII դ–ի վերջ):

ՌԵՄԵԿ (Remek) Վլադիմիր (ծ. 1948), չեխ 1–ին տիեզերագնաց օդաչուն (1–ինը, որ ԽՍՀՄ կամ ԱՄՆ քաղաքացի չէր): Չեխոսլովակիայի և ԽՄ հերոս (1978): Թռել է 1978–ին «Սոյուզ–28» տիեզերանավով և «Սալյուտ–6» ուղեծր. կայանով:

ՌԵՄԵՍԼՈ Վասիլի Նիկոլաևիչ (1907–1983), ռուս ընտրասերումնաբան: ԽՍՀՄ ԳԱ (1974), ՀամԳԳԱ (1964) ակադ.: Սոց. աշխ. հերոս (1966, 1977): Աշակել է ընտրասերման մեթոդներ, որոնց շնորհիվ ստացվել են ցորենի բարձրբերքատու սորտեր («Միրոնովյան»): Լենինյան (1963), ԽՍՀՄ Պետ. (1979) մրց–ներ:

ՌԵՄԻԶՈՎ Ալեքսեյ Միխայլովիչ (1877–1957), ռուս գրող: 1921–ից՝ վտարանդի: Հեղինակ է «Լճակ» (1905), «Խոսք Ռուսական երկրի կործանման մասին» (1918), «Երաժշտության ուսուցիչը» (հրտ.՝ 1983) վեպերի, «Հարդարված աչքերով» (1951) ինքնակենսագր., «Իրերի կրակը: Երազներ և նախաերազներ: Գոգոլ: Պուշկին: Լերմոնտով: Տուրգենև: Դոստոևսկի» (1954) երկերի և այլ գործերի:

ՌԵՅ (Rej) Միկոլայ (1505–1569), լեհ գրող: Հեղինակ է «Կարճ գրույց երեք անձի միջև...» (1543), «Արժանավոր մարդու կյանքի իրական պատկերը» (1558) այլաբան. պոեմի, «Հայելի» (1568) աշխ–յան, նաև երգիծ. բանաստեղծությունների, առակների:

ՌԵՅ (Ray) Ջոն (1627–1705), անգլիացի կենսաբան. առաջարկել է բույսերի 1–ին բնական համակարգը: Պատկերացում է տվել միաշաքիլ. և երկշաքիլ. բույսերի մասին: Առաջինն է օգտագործել «ցեղ» և «տեսակ» հասկացությունները (ժամանակակից իմաստով):

ՌԵՅ Սատիյաջիտ (1921–1992), հնդիկ կինոռեժ.: Նկարահանել է «Ճանապարհի երգը» (1955), «Անհաղթը» (1956), «Ապուի աշխարհը» (1959) եռերգությունը, «Մեծ քաղաք» (1963), «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն» (1971), «Միջնորդը» (1975), «Տուն և աշխարհ» (1983) և այլ ֆիլմեր:

ՌԵՅԳԱՆ (Reagan) Ռոնալդ Ուիլսոն (1911–2004), ԱՄՆ 40–րդ նախագահը՝ 1981–89–ին՝ Հանրապետ. կուս–յունից: Հոլիվուդի կինոդերասան (1937–ից): 1942–45–ին ծառայել է ՌՕՈՒ տեղեկատվության մարմիններում: 1967–75–ին՝ Կալիֆոռնիայի նահանգապետ:

ՌԵՅԵՍ (Reyes) Ալֆոնսո (1889–1959), մեքսիկացի գրող, պատմաբան, դիվանագետ: Հեղինակ է «Հետքեր» (1922) բանաստեղծությունների ժող–ի, «Դաժան Իփիգենիան» (1924) դրամատիկ. պոեմի, «Անաուակի տեսիլքը» (1917) էսսեի, «Հակումներ և հակասություններ» (հ. 1–5, 1921–26) էսսեների ժող–ի, «Գրական փորձ» (1942), «Սահմանների նշում» (1944) գրականագիտ. աշխ–ների: Կատարել է թարգմ–յուններ:

ՌԵՅԶԵՆ Մարկ Օսիպովիչ (1895–1992), ռուս. երգիչ (բաս): ԽՍՀՄ ժող. արտիստ (1937): 1925–30–ին՝ Լենինգրադի ՕԲԹ–ի, 1930–54–ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մենակատար (Բորիս՝ Մ. Պ. Մուսորգսկու «Բորիս Գոդունով», Մեֆիստոֆել՝ Շ. Գունոյի «Ֆաուստ», Սուսանին՝ Մ. Ի. Գլինկայի «Իվան Սուսանին», ևն):

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1949, 1951):

ՌԵՅԼԻ (Railly, Ռոզենբլյում) Սիդնեյ (1874–1925), անգլիացի հետախույզ: Խորհրդ. իշխանության դեմ դավերի (1918–19, Մ. Պետերբուրգ) և Ջենովայի խորհրդաժողովի ժամանակ (1922) խորհրդ. ներկայացուցիչների (Լ. Բ. Կրասին, Գ. Վ. Չիչերին) դեմ մահափորձերի կազմակերպիչներից: Ձերբակալել և գնդակահարել են Համառուսաստան. չեկայի աշխատակիցները:

ՌԵՅԽԵՆԲԱԽԻ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԵՐ 1813, կնքվել է Ռեյխենբախում (Reichenbach, այժմ՝ Զերժոնյով, Լեհաստան), 1. հունիսի 3(15)-ին՝ Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև՝ Նապոլեոնի դեմ համատեղ պատերազմի վերաբերյալ: 2. Հունիսի 15(27)-ին՝ մի կողմից՝ Ռուսաստանի ու Պրուսիայի, մյուս կողմից՝ Ավստրիայի միջև: Եզրափակել է Ավստրիայի՝ 6-րդ հականապոլեոնյան դաշինքին միանալու շուրջ բանակցությունները: Նախատեսել է համատեղ ռազմ. գործողությունների ընդհ. պլան, նախագծել հետպատերազմ. Եվրոպայի կառուցվածքի հիմքերը:

ՌԵՅԽԼԻՆ (Reuchlin) Յոհան (1455–1522), գերմանացի բանասեր: Նրա ստեղծագործությունները նպաստել են Աստվածաշնչի ուսումնասիրության գործում քննադատ. մտքի զարգացմանը: Ռ-ի բանավեճը կաթոլիկ աստվածաբանների հետ, ի պաշտպ-յուն գիտ. հետազոտության ազատության (այսպես կոչված «ռեյխլինյան վեճը»), պաշտպանել են մեծ թվով հումանիստներ:

ՌԵՅԿՅԱՎԻԿ (Reykjavik), *Իսլանդիայի* մայրաքաղաքը (1944–ից), նվինգստ ֆախսաֆլոուի ծոցի հվ. ափին: Բն.՝ 119 հզ. (արվարձաններով՝ 210 հզ., 2012): Ունի օդանավակայան: Երկրի մշակութ. և տնտ. կենտրոնն է: Կան ձկնավերամշակման, ՏՏ ոլորտի, դեղագործ., միկրոկենսբ., թեթև արդ-յան, նավաշինական և այլ ընկ-ներ: Գործում են բուհեր, թանգարաններ և թատրոններ, Օդերևութաբան., Հրաբխագիտ. և այլ ինստ-ներ: Հիմնադրվել է առաջին նորվեգ. վերաբնակների ափ իջնելու վայրում մոտ 874-ին: Քաղաքի կարգավիճակ է ստացել 1786-ին:

ՌԵՅՀԱՆԻ Ամին իբն Ֆարիս (1876–1940), արաբ գրող (Լիբանան): 1888-ից՝ ԱՄՆ-ում: Գրել է նաև անգլ.: Հեղինակ է «ար-Ռեյհանիյաթ» (հ. 1–4, 1922–23) էսսեների, հոդվածների, արձակ բանաստեղծությունների ժող-ի, «Հատակի շուշանը» (1915), «Հարեմից դուրս» (1917) վեպերի և այլ գործերի:

ՌԵՅՄՈՆՏ (Reymont) Վլադիսլավ (1867–1925), լեհ գրող: Հեղինակ է «Կատակերգական դերասանուհին» (1896), «Ավետյաց երկիր» (հ. 1–2, 1899), «Գեղջուկները» (հ. 1–4, 1904–09) սոցիալ. թեմաներով վեպերի, «1794 թվական» (1913–18) պատմ. եռերգության, նաև նովելների, վիպակների: Նոբելյան մրց. (1924):

ՌԵՅՄՍ (Reims), ք. Ֆրանսիայում: Բն.՝ 182,5 հզ. (2013): Տրանսպորտ. հանգույց է, ջրանցքներով միացված է Մառն և Էն գետերին: Հիմնադրվել է մ. թ. ա. I դ-ում՝ որպես կելտ. ռեմեր ցեղի բնակավայր: Պատմաճարտ. հուշարձաններից Մարսի հաղթակամարը (II դ.), Սեն Ռեմի աբբայությունը, ուշգոթ. Նոտր Դամ տաճարը (Ռ-ի տաճար, 1211–1311) և Տո պալատը (XV–XVI դդ.) Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում են: Մինչև 1825-ը Ռ. եղել է ֆրանս. թագավորների թագադրման վայրը:

ՌԵՆՆ Եվգենի Բորիսովիչ (ծ. 1935), ռուս. բանաստեղծ: Հեղինակ է «Կամուրջների անունները» (1984), «Հայելիների խավարը» (1990), «Ժամացույցի սլաքին հակառակ» (1991), «Կանխազուշակում» (1994), «Մեր թվականությունից առաջ» (2004) և այլ ժող-ների: ՌԴ Պետ. (1996), «Բանաստեղծ» ազգ. գր. (2012) մրց-ներ:

ՌԵՅՆԱԼ (Raynal) Գիյոմ Թոմաս Ֆրանսուա (1713–1796), ֆրանսիացի պատմաբան, սոցիոլոգ: Համագործակցել է Դ. Դիդրոյի «Հանրագիտարանի» հետ: «Երկու Հնդկաստաններում եվրոպացիների փիլիսոփայական ու քաղաքական հաստատությունների և առևտրի պատմությունը» (հ. 1–6, 1770) երկում քննադատել է ավատ-միապետ. կարգերը, գաղութատիրությունը, կաթոլիկ եկեղեցին:

ՌԵՅՆԲԵՐԳ Սամուիլ Արոնովիչ (1897–1966), ռուս. հրեա ռենտգենաբան, գիտ. դպրոցի հիմնադիր: Ռուսաստանի գիտ. վաստ. գործիչ (1941): ԽՍՀՄ-ում առաջինն է կիրառել մարդկանց անոթագրությունը:
Լ.Ենինյան մրց. (1966):

ՌԵՅՆՈԼԴՍ (Reynolds) Ջոշուա (1723–1792), անգլիացի գեղանկարիչ, արվ-ի տեսաբան: Լոնդոնի գեղ. ակադ-ի հիմնադիրը և 1-ին նախագահը (1768–90): Հեղինակ է հանդիսավոր դիմանկարների («Ծովակալ Ջ. Օ. Հիտֆիլդ», 1787–88, ևն), պատմ. և դից. պատկերների («Ամուրն արձակում է Վեներայի գոտին», 1788, ևն):

ՌԵՅՆՈԼԴՍ Օսբոռն (1842–1912), անգլիացի ֆիզիկոս-ճարտարագետ: Աշխ-ները վերաբերում են դինամիկ. նմանության տեսությանը, մածուցիկ հեղուկի հոսքին, տուրբուլենտության և յուղման տեսություններին: Փորձնականորեն սահմանել է նմանության չափանիշ՝ *Ռեյնոլդսի թիվը*, պատրաստել մի շարք տուրբիններ և կենտրոնախույս պոմպեր:

ՌԵՅՆՈԼԴՍԻ ԹԻՎ (Re), 1. չափազուրկ մեծություն, մածուցիկ հեղուկի հոսքի հիմն. բնութագրերից, որը հավասար է իներցիայի և մածուցիկության ուժերի հարաբերությանը: $Re = \rho v l/\mu$, որտեղ ρ-ն հեղուկի խտությունն է, l-ը՝ բնութագրիչ գծային չափը (օր.՝ խողովակի տրամագիծը), v-ն՝ բնութագրիչ արագությունը, μ-ն՝ հեղուկի մածուցիկության գործակիցը: Կոչվել է Օ. *Ռեյնոլդսի* պատվին: 2. Ռ. թ. **մագնիսական**, էլեկտրահաղորդիչ հեղուկների ու գազերի (պլազմայի) համար, որոնք շարժվում են մագնիս. դաշտում. $R_m = 4\ \pi\sigma Lv/c$, որտեղ L-ը բնութագր. չափն է, v-ն՝ հոսքի արագությունը, σ-ն՝ էլեկտրահաղորդականությունը, c-ն՝ լույսի արագությունը վակուումում:

ՌԵՅՆՈՒՏԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ խնկարագրել է ֆրանսիացի բժիշկ Մ. Ռեյնոն (M. Raunaud) 1862-ին, ձեռնաթաթերի և ոտնաթաթերի զարկերակների համաչափ ցավագին կծկանքներ, որոնք ուղեկցվում են այդ հատվածների սառնությամբ, անզգայացմամբ, պարբերաբար գունափոխմամբ:

«ՌԵՅՆՋԵՐ», Լուսնի նկարահանման ամերիկ. միջմոլորակ. ավտոմատ կայանների սերիա և նրանց մշակման ու արձակման ծրագիրը: Առանձին «Ռ.»-ներ արձակվել են մերձերկրյա ուղեծիր: Առյգն զանգվածը՝ 367 *կգ*: 1961–65-ին արձակվել է 9 «Ռ.»: «Ռ-7»-ն առաջինն է նկարահանել Լուսինը մոտ տարածությունից (1964):

ՌԵՅՆՈՒՈՈԹԵՐ (Rainwater) Ջեյմս (1917–1986), ամերիկացի ֆիզիկոս: Առաջարկել է (1950) ատոմի միջուկում պտտ. տիպի գրգռման գոյության գաղափարը և միջուկի ընդհանրացված մոդել: Նոբելյան մրց. (1975, Օ. *Բորի* և Բ. *Մոտելսոնի* հետ):

ՌԵՅՍ (Ռեյշ, Ռույշ, Ruysch) Ֆրեդերիկ (1638–1731), նիդեռլանդացի անատոմ: Առաջարկել է դիակների բալզամացման և անատոմ. պրեպարատների պատրաստման մեթոդներ: Ստեղծել է անատոմ. թանգարան, որի հավաքածուն 1717-ին գնել է Պետրոս I-ը:

ՌԵՅՄՄՈՒՍ, **ռեյմսա** (գերմ.՝ Reißmaß), նախապատրաստուկի վրա հենքային գծերին զուգահեռ նշագծեր անցկացնելու կամ գծագրից նախապատրաստուկի վրա փոխադրելու գործիք: Սովորաբար սեղմակով կանգնակ է, որով ամրացվում է գծիչը:

ՌԵՅՎԵՆ (Raven) Պիտեր Համիլտոն (ծ. 1936), ամերիկացի բուսաբան: ՌԴԱ արտ. (1988), ԱՄՆ ԳԱԱ (1977) անդամ: Միսսուրիի բուսաբ. այգու տնօրեն (1971): Աշխ-ները վերաբերում են բույսերի կարգաբանությանը, պոպուլացիոն կենսբ-յանը և համաէվոլյուցիային, արևադարձ. բուսականության պահպանությանը:
ԱՄՆ ազգ. գիտ. մեդալ (2000):

ՌԵՅՏ, **Ռիդ** (Rijt, Reid), Բենեդիկտ (1451–1534), ուշգոթ. շրջանի չեխ ճարտ.: Նրա Վլադիսլավյան դահլիճը (1490–1500, Պրահա) աչքի է ընկնում բարդ «ծաղկաթերթավոր» թաղերով:

ՌԵՅՏԵՐ (Reiters) Մաքս (Մարտինիշ) Անդրեևիչ (1886–1950), լատիշ զորահրամ., գեն-գնդ. (1943): ՀՄՊ-ի ժամանակ՝ բանակների, Բրյանսկի ռազմաճակատի հրամ., Վորոնեժի ռազմաճակատի գլխ. հրամ-ի տեղակալ:

ՌԵՅՈՒՆՅՈՆ, հրաբխ. կղզի Հնդ. օվկ-ում՝ Մասկարենյան կղզեխմբում, Ֆրանսիայի անդրծով. տարածաշրջան (1946–ից): Տարածքը՝ 2,5 հզ. *կմ*², բն.՝ ավելի քան 820 հզ. (2010): Բաժանված է 4 վարչ. օկրուգների: Դրամ. միավորը՝ եվրո: Բարձր.՝ մինչև 3069 *մ*: Կա գործող հրաբուխ (Ֆուռնեզ, 3069 *մ*): Հայտնագործել են պորտուգալացիները XVI դ-ում:

ՌԵՅՈՒՆՅՈՆՑԻՆԵՐ, կրեոլյան ժողդ, Ռեյունյոնի հիմն. բնակչությունը: Ընդհ. թիվը՝ շուրջ 630 հզ. (2010): Խոսում են կրեոլերենով և ֆրանս-ով: Հավատացյալները կաթոլիկ են:

ՌԵՆ (Renn) Լյուդվիգ (Առնոլդ Ֆիտ ֆոն Գոլսենաու, 1889–1979), գերմանացի գրող: Հակաֆաշիստ. պայքարի մասնակից: 1932–35-ին եղել է բանտերում և համակենտրոնացման ճամբարներում: 1949-ից հետո՝ ԳԴՀ-ում: Հեղինակ է «Պատերազմ» (1928) և «Պատերազմից հետո» (1930) սոցիալ-քննադատ. և ինքնակենսագր., «Ազնվականության մայրամուտը» (1944) վեպերի, «Իմ կյանքի շրջադարձերը» (հրտ.՝ 1980) հուշագրության և այլ գործերի: Հայ. հրատարակվել է «Նոբի» (1964) գործը: ԳԴՀ ազգ. (1955, 1961), Հ. Մանի անվ. (1962) մրց-ներ:

ՌԵՆ (Wren) Քրիստոֆեր (1612–1723), անգլիացի ճարտ., մաթեմատիկոս, աստղագետ: Տարբեր ձևերի շենքերը ներդաշնակել է բնապատկերի և քաղաք. միջավայրի հետ (Լոնդոնի վերակառուցման հատակագիծ, 1666, Սբ Պողոսի տաճար, 1675–1711, Լոնդոն):

ՌԵՆ (Rennes), ք. Ֆրանսիայում, Իլ և Վիլեն դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Տրանսպորտ. հանգույց է, ջրանցքով միացված է Լա Մանշ նեղուցին: Բն.՝ 210,2 հզ. (2010): ՏՏ ֆրանս. կենտրոններից է: X–XVI դդ-ում եղել է Բրետան դքսության մայրաքաղաքը:

ՌԵՆԱՆ (Renan) Ժոզեֆ Էռնեստ (1823–1892), ֆրանսագիր հրեա գրող, կրոնի պատմաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. (1860), Ֆրանսիայի ակադ-ի (1878)

անդամ: «Քրիստոնեության ծագման պատմություն» (գիրք 1–8, 1863–83) աշխ-յան մեջ, «Հիսուսի կյանքը» գրքում Քրիստոսին պատկերել է որպես պատմականորեն գոյություն ունեցած քարոզչի: Քննադատելով Աստվածաշունչը՝ փորձել է բանականորեն հիմնավորել ողջ գերբնականը:

ՌԵՆԱՐ (Renard) Ժան Կլոդ (1922–2002), ֆրանսիացի բանաստեղծ: Հեղինակ է «Ժուան» (1945) պոեմի, «Աշխարհի փոխակերպությունը» (1951), «12 ասույթ» (1980), «Ո՞վ կամ ինչ» (1998) և այլ ժողոների:

ՌԵՆԵ (Resnais) Ալեն (1922–2014), ֆրանսիացի կինոռեժ.: Նկարահանել է «Վան Գոգ» (1948) կարճամետրաժ, «Գեռնիկա» (1949), «Գիշեր և մառախուղ» (1956) վավերագր., «Հիրոսիմա, իմ սեր» (1959), «Անցյալ տարի Մարիենբադում» (1961), «Պատերազմը վերջացած է» (1966), «Կանխատեսում» (1977), «Իմ ամերիկացի քեռին» (1980), «Մեր՝ մինչև մահ» (1984), «Վայրի խոտեր» (2009) գեղ. և այլ ֆիլմեր: «Օսկար» մրց. (1948):

ՌԵՆԵՍԱՆՍ (ֆրանս.՝ Renaissance), տես *Վերածնունդ*:

ՌԵՆԻԵ (Régnier) Անրի Ֆրանսուա Ժոզեֆ դը (Հյուգ Վինի, 1864–1936), ֆրանսիացի գրող: Ֆրանսիայի ակադ-ի անդամ (1911): «Հնագույն և ասպետական բանաստեղծություններ» (1887–90), «Ինչպես երազում» (1892) ժող-ներում փորձել է բարեփոխել ֆրանս. տաղաչափությունը: Հեղինակ է նաև «Կավե մեդալները» (1900), «Ժամերի հայելին» (1910) բանաստեղծությունների, «Երազի սիրահարները» (1924), «Կորսված երջանկություն» (1924) պատմվածքների ժող-ների, «Կրկնակի սիրելին» (1900), «Կենդանի անցյալը» (1905), «Մեղսագործուհին» (1920) և այլ վեպերի: Հայ. հրատարակվել են «Ինձ բավեց մի փոքրիկ եղեգ», «Թե պատմեցի» բանաստեղծությունները («Ծաղկաքաղ ֆրանսիական դասական քնարերգության», 1976, ժող.):

ՌԵՆԻՈՒՄ (Renium), Re, տարրերի պարբեր. համակարգի VII խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 75, ա. զ.՝ 186,207, անցումային տարր է: Բնական Ռ. բաղկացած է ^{185}Re կայուն և ^{187}Re ($T_{1/2}$ = 1011 տարի) թույլ ճառագայթաակտիվ իզոտոպներից: Անվանումը՝ լատ. Renus – Հռենոս գետի անունից, հայտնագործվել է Գերմանիայում: Ռ. բաց մոխրագույն, արծաթափայլ, ծանր և դժվարահալ մետաղ է, խտ.՝ 21,01 *գ/սմ*^{3}, $t_{հալ.}$՝ 3180°C: Քիմիապես շատ կայուն է: Ստանում են մոլիբդեն. հանքաքարից: Ռ-ի և դժվարահալ մետաղների (W, Mo, Ta) համաձուլվածքները խիստ կրակադիմացկուն են և օգտագործվում են զերձայն. ինքնաթիռների և հրթիռների դետալների, W-ի և Mo-ի հետ համաձուլվածքները՝ շիկացման թելերի և ջերմազույգերի պատրաստման համար: Ռ-ի պատվածքները մետաղները պաշտպանում են կոռոզիայից և մաշումից: Կատալիզորդ է նավթի դեհիդրման և կրեկինգի ժամանակ:

ՌԵՆՅԱՐ (Regnard) Ժան Ֆրանսուա (1655–1709), ֆրանսիացի դրամատուրգ: 1688-ից ստեղծել է ֆարսեր՝ երաժշտությամբ ու պարերով հանդերձ (մեծ մասը Շ. Ռ. Դյուֆրենիի հետ): Հեղինակ է «Խաղամոլը» (բեմ.՝ 1696, հրտ.՝ 1697), «Միակ ժառանգը» (հրտ.՝ 1708) չափածո, Պլավտոսի սյուժեներով գրած «Անսպասելի վերադարձը» (բեմ. և հրտ.՝ 1700), «Մենեխմները» (բեմ.՝ 1705, հրտ.՝ 1706) կատակերգությունների, «Պրովանսացի կինը» (հրտ.՝ 1731) ինքնակենսագր. վեպի:

ՌԵՆՅՈ (Regnault) Անրի Վիկտոր (1810–1878), ֆրանսիացի ֆիզիկոս-քիմիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. անդամ (1848): Որոշել է բազմաթիվ գազերի, գոլորշիների, հեղուկների և պինդ նյութերի ֆիզ. հաստատունները:

ՌԵՆՆԵՐ (Renner) Կառլ (1870–1950), Ավստրիայի սոց-դ. կուս-յան և 2-րդ Ինտերնացիոնալի ղեկ-ներից, ավստրոմարքսիզմի գաղափարախոս: 1918–20-ին՝ Ավստրիայի դաշն. կանցլեր: Եղել է Ավստրիայի և Գերմանիայի միավորման կողմնակից: 1945-ին՝ Ավստրիայի ազատագրումից հետո, ժամանակավոր կառ-յան ղեկ.: 1945–50-ին՝ Ավստրիայի նախագահ:

ՌԵՆՆԵՐ Յոհան (մոտ 1525–1583), գերմանացի պատմաբան, ժամանակագիր: Կազմել է «Լիվոնիայի պատմությունը» (գիրք 1–9, ընդգրկում է XII դ-ից մինչև 1582-ի իրադարձությունները):

ՌԵՆՆԻՆ, **քիմոզին**, շրդանի ֆերմենտ, մարսող. ֆերմենտ. արտադրվում է երիտասարդ որոճող կենդանիների շրդանում: Ճեղքում է պեպտիդները: Օգտագործվում է պանրագործության մեջ՝ որպես մերան:

«ՌԵՆՈ» (Renault), ֆրանս. ավտոմեքենաշին. ընկ.: Հիմնադրվել է 1899-ին: Տարեկան արտադրում է շուրջ 2,7 մլն ավտոմեքենա (2012):

ՌԵՆՍՈՄ (Ransom) Ջոն Քրոու (1888–1974), ամերիկացի բանաստեղծ, գրաքննադատ: Ամերիկ. «նոր քննադատության» հիմնադիրներից («Նոր քննադատություն», 1941): Հեղինակ է «Բանաստեղծություններ Աստծու մասին» (1919), «Դողէրոցք» (1924), «Պոեզիայի ընտրանի» (1945, 1969) ժող-ների:

ՌԵՆՏԱ (գերմ.՝ Rente, < լատ. reddita – վերադարձված), եկամուտ, որը կապված չէ ձեռնարկատիր. գործունեության հետ, և ռանտյեները (Ռ. ստացող անձինք) կանոնավորապես ստանում են տոկոսի ձևով: ՀՀ քաղաքաց. օրենսգրքով՝ պայմանագիր, որով Ռ. ստացողը Ռ. վճարողին սեփականության իրավունքով հանձնում է գույք, իսկ Ռ. վճարողը պարտավորվում է այդ գույքի դիմաց պարբերաբար վճարել Ռ. (որոշակի գումար):

ՌԵՆՏԳԵՆ (Röntgen), գերմանացի կահույքագործների ընտանիք: **Աբրահամ Ռ.** (1711–1793), պատրաստել է դաս. և ռոկոկո ոճերի կահույք՝ երաժշտ. և այլ մեխանիզմներով՝ տարատեսակ փորագրություններով: Որդին՝ **Դավիդ Ռ.** (1743–1807), օգտագործել է ամպիրի ձևեր, նրա գործունեությամբ Ռ-ները ձեռք են բերել միջազգ. ճանաչում:

ՌԵՆՏԳԵՆ Վիլհելմ Կոնրադ (1845–1923), գերմանացի ֆիզիկոս: Բացահայտել է (1895) հետագայում ռենտգեն. կոչված ճառագայթումը, ուսումնասիրել նրա հատկությունները: Նրա անունով է կոչվել ճառագայթման միավոր ***ռենտգենը***: Աշխ-ներ ունի նաև բյուրեղների պիեզո- և պիրոէլ. հատկությունների, մագնիսականության վերաբերյալ: Նոբելյան մրց. (1901):

ՌԵՆՏԳԵՆ, ռենտգեն. և γ-ճառագայթման չափման արտահամակարգ. միավոր, որոշվում է չոր օդի վրա ճառագայթների իոնացնող ազդեցությամբ, նշանակումը՝ *Ռ* (R): Կոչվել է Վ. ***Ռենտգենի*** պատվին: 1 Ռ. համապատասխանում է օդի՝ 1 *սմ*^{3}-ում՝ 1,61 · 10^{12} զույգ, կամ 1 *գ*-ում՝ 2,083 · 10^9 զույգ իոնների առաջացմանը, 1*Ռ* = 2,57976 · 10^{-4} *կ/կգ*:

ՌԵՆՏԳԵՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, բժշկագիտ-յան բնագավառ. ուսումնասիրում է ռենտգեն. ճառագայթների կիրառումը՝ օրգանների և համակարգի կառուցվածքի ու ֆունկցիաների հետազոտման, հիվանդությունների ախտորոշման և բուժման նպատակներով: ՀՀ-ում Ռ-ական ուսումնասիրություններ սկսել են 1927-ից՝ ԵՊՀ բժշկ. ֆակ-ի նորաստեղծ Ռ-յան ամբիոնում, 1946-ից՝ Ռ-յան և ուռուցքաբանության ԳՀԻ-ում (1971-ից՝ Բ. Ֆանարջյանի անվ., 1985-ից՝ Ուռուցքաբանության կենտրոն) և Հանրապետ. ուռուցքաբան. կենտրոնում (հիմն.՝ 1952):

ՌԵՆՏԳԵՆԱԳԻՐ, օբյեկտի՝ լուսաժապավենի վրա ամրագրված պատկերը, որն առաջանում է նրա հետ ռենտգեն. ճառագայթման փոխազդեցության (կլանում, անդրադարձում. դիֆրակցիա) արդյունքում: Գրանցման գործողությունը և դրանով նյութի կառույցի ուսումնասիրությունը կոչվում են ռենտգենագրություն (սկիագրաֆիա) նյութերի:

ՌԵՆՏԳԵՆԱԴԻՏՈՒՄ, ռենտգենախտորոշման հիմն. եղանակներից, որով ստանում են (հիմնականում՝ ռենտգեն. էկրանի վրա) հետազոտվող օբյեկտի պատկերը:

ՌԵՆՏԳԵՆԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄՊԵԿՏՐԱԴԻՏՈՒՄ, նյութի կառույցի ուսումնասիրման եղանակ, որը հիմնված է ռենտգեն. ճառագայթման ազդեցությամբ առաջացող լուսաէֆեկտի վրա: Նյութի ճառագայթման ժամանակ տեղի է ունենում, այսպես կոչված, լուսաէլեկտրոնի առաքում, որի կինետիկ էներգիայի չափմամբ հնարավոր է որոշել յուրաքանչյուր ատոմին հատուկ կապի էներգիան:

ՌԵՆՏԳԵՆԻՈՒՄ (Roentgenium, կոչվել է ի պատիվ Վ. ***Ռենտգենի***), Rg, արհեստ. ռադիոակտիվ քիմ. տարր: Պարբեր. համակարգի կարճ տարբերակի (երկարի՝ 11-րդ խմբի) 1-ին խմբի տարր: Կարգաթիվը՝ 111, ա. զ.՝ 281, անդրակտինոիդ է: Ամենաերկարակյաց իզոտոպը՝ ^{272}Rg ($T ½ = 1,5$ *մվ*):

ՌԵՆՏԳԵՆԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, նյութի ատոմ. կառուցվածքի ուսումնասիրման եղանակների ամբողջություն՝ ռենտգեն. ճառագայթների դիֆրակցիայի միջոցով: Դիֆրակցիոն պատկերով պարզում են նյութի էլեկտրոն. խտության բաշխումը, իսկ նրանով՝ ատոմների տեսակն ու նրանց դիրքորոշումը: Ռ. վ-յամբ ուսումնասիրում են բյուրեղների, հեղուկների, սպիտակուց. մոլ-ների ևնի կառուցվածքը: Ռ. վ-յան սարքեր են ռենտգեն. դիֆրակտաչափը, անկյունաչափը ևն:

ՌԵՆՏԳԵՆՀԱԿԱԴԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ, քիմ. նյութեր, որոնք մարմնի մեջ նբարկելիս բարելավում են հետազոտվող օբյեկտի պատկերը (մեծացնելով կամ փոքրացնելով ռենտգեն. ճառագայթման կլանումը և ստեղծելով պատկերի ցայտունություն):

ՌԵՆՏԳԵՆՅԱՆ ԽՈՂՈՎԱԿ, էլեկտրավակուում. սարք՝ ռենտգեն. ճառագայթներ ստանալու համար: Պարզագույն Ռ. խ. կազմված է ներզոդված կաթոդ և անոդ էլեկտրոդներով ապակե անոթից: Կաթոդի արձակած էլեկտրոններն արագաց-

վում են էլեկտրոդների միջև ստեղծվող ուժեղ էլ. դաշտով և ռմբակոծում անոդը: Անոդին էլեկտրոնների հարվածի կինետիկ էներգիան մասամբ վերածվում է ռենտգեն. ճառագայթման էներգիայի:

ՌԵՆՏԳԵՆՅԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄ, ***ռենտգենյան ճառագայթներ***, աչքով անտեսանելի ռադիոմագնիս. ճառագայթում՝ $\lambda=10^{-3}$–10^{-2} *նմ* ալիքի երկ–յամբ: Թափանցում է տեսանելի լույսի համար անթափանց որոշ նյութերով: Պայմանականորեն բաժանվում է կոշտ ($\lambda < 0{,}2$ *նմ*) և փափուկ ($\lambda > 0{,}2$ *նմ*) ճառագայթման: Արձակվում են նյութում էլեկտրոնների արգելակման ժամանակ (անընդհատ սպեկտր) և ատոմի արտաքին էլեկտրոն. շերտից ներքին շերտերին էլեկտրոնների անցման դեպքում (գծավոր սպեկտր): Աղբյուրը ***ռենտգենյան խողովակն*** է, որոշ ռադիոակտիվ իզոտոպներ, էլեկտրոնների արագացուցիչներն ու կուտակիչները (սինքրոտրոն. ճառագայթում): Ընդունիչները՝ լուսաժապավեն, լյումինեսցենտ. էկրաններ, միջուկ. ճառագայթման դետեկտորներ: Կիրառվում են ***ռենտգենակառուցվածքային վերլուծության***, բժշկության, արատորոշման, ռենտգեն. սպեկտր. վերլուծության ենթ մեջ: Հայտնաբերել է Վ. *Ռենտգենը* 1895-ին:

Տիեզերական Ռ. ճ., տիեզ. մարմինների էլեկտրամագնիս. ճառագայթումը՝ ֆոտոնների $10–10^5$ *էՎ* էներգիաների ընդգրկույթում, գրանցվում է ռենտգեն. աստղադիտակով: Գոյություն ունեն վերջավոր (դիսկրետ) աղբյուրներ և դիֆուզային ֆոն: Գալակտիկ. աղբյուրներից են հիմնականում նեյտրոն. աստղերը և, հավանաբար, սև խոռոչները, գնդային աստղ. կուտակումները, արտագալակտիկ. աղբյուրներից՝ քվազարները, առանձին գալակտիկաներ և նրանց կույտերը:

ՌԵՆՏԳԵՆՅԱՆ ՄԱՆՐԱԴԻՏԱԿ, օբյեկտների մանրաչափ կառուցվածքի ուսումնասիրման սարք՝ ***ռենտգենյան ճառագայթների*** միջոցով: Պրոյեկցիոն (ստվեր.) Ռ. մ–ում օբյեկտը (օր.՝ բուս. հատույթը) տեղադրված է ռենտգեն. ճառագայթման կետային աղբյուրի մոտ, որից տարամիտվող փունջը լուսավորում է նմուշը, իսկ նրանից հեռու գտնվող լուսաժապավենի վրա առաջանում է նմուշի խոշորացված պատկերը:

ՌԵՆՏԳԵՆՅԱՆ ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ, օբյեկտների ստվեր. պատկերների լուսանկարչ. կամ տեսամագնիս. գրանցումը, որոնք ստացվում են նրանց՝ ***ռենտգենյան ճառագայթներով*** լուսավորմամբ: Իրականացվում է ուղղակի եղանակով (լուսազգայուն նյութը լուսավորվում է անմիջապես ռենտգեն. ճառագայթներով) և անուղղակի (ֆլուորեսցենտող էկրանին ստացված պատկերը վերատպվում է լուսաժապավենի կամ գրանցվում մագնիս. ժապավենի վրա):

ՌԵՆՏԳԵՆՅԱՆ ՕՊՏԻԿԱ, ուսումնասիրում է ***ռենտգենյան ճառագայթման*** փոխազդեցության էֆեկտները նյութի հետ, որոնց մեջ այն տարածվում է: Ռենտգեն. ընդգրկույթի օպտիկ. բնութագրերն ունեն մի շարք առանձնահատկություններ՝ բեկման ցուցիչը քիչ է տարբերվում 1–ից, ուսնյակի տիպի տարրեր գործնականում չեն օգտագործվում, նյութում տեղի է ունենում ֆոտոնների զգալի կլանում ևն: Նյութի հետ փոխազդեցության բնույթը կախված է ճառագայթման ալիքի և կառուցվածք. անհամասեռությունների չափերի հարաբերություններից: Ռենտգեն. ճառագայթումը կառավարվում է հատուկ ռենտգեն. հայելիներով, որոնք կազմված են հատուկ նյութերի բազմաթիվ շերտերից:

ՌԵՆՈՒԱՐ (Renoir) Ժան (1894–1979), ֆրանսիացի կինոռեժ.: Օ. ***Ռենուարի*** որդին: Նկարահանել է «Կյանքը մեզ է պատկանում», «Հատակում» (երկուսն էլ՝ 1936), «Մեծ պատրանք» (1937), «Մարսելյեզ» (1938), «Ֆրանսիական կանկան» (1954), «Նախաճաշ խոտի վրա» (1959), «Ժան Ռենուարի փոքր թատրոնը» (1969, հեռուստաֆիլմ) և այլ ֆիլմեր:

ՌԵՆՈՒԱՐ Օգյուստ (1841–1919), ֆրանսիացի գեղանկարիչ, գրաֆիկ, քանդ.: Ժ. ***Ռենուարի*** հայրը: Ստեղծել է լուսավոր և թափանցիկ բնապատկերներ, դիմանկարներ, կենցաղ. դինամիկ տեսարաններ, պատկերել է քաղաք. կյանքի տոնակատարություններ («Մուլեն դը լա Գալետ», 1876, «Ժ. Սամարի», 1878), խաղաղ հանգստի տեսարաններ («Ճաշից հետո», 1879):

ՌԵՆՈՒՎԻԵ (Renouvier) Շառլ (1815–1903), ֆրանսիացի փիլ.: Նեոկրիտիցիզմի (նորկանտականության ֆրանս. տարբերակը) առաջնորդը: Ռ–ի իմացաբանության հիմն. սկզբունքը՝ «չկա օբյեկտ առանց սուբյեկտի» (մատերիա՝ առանց գիտակցության), զարգացել է իմանենտ փիլ–յան մեջ և էմպիրոկրիտիցիզմում: Ռ–ի բարոյագիտ–յունը պերսոնալիզմի ակունքներից է:

ՌԵՇԵՏՆԻԿՈՎ Ֆեոդոր Գրիգորևիչ (1919–2011), ռուս. ֆիզքիմիկոս և մետաղագործ: ՌԳԱ ակադ. (1992): Աշխ–ները վերաբերում են ֆիզքիմիային և հազվագյուտ ու ճառագայթաակտիվ տարրերի ստացման տեխնոլոգիային: ԽՍՀՄ Պետ. մրց. (1951, 1975, 1985):

ՌԵՇԵՏՆԻԿՈՎ Ֆեոդոր Պավլովիչ (1906–1988), ռուս. գեղանկարիչ: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1974): ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի անդամ (1953, փոխնախագահ՝ 1974–87–ին): Հեղինակ է գր. մշակված սյուժետներով ժանր. նկարների («Կրկին երկուսը», 1952): Վառ արտահայտիչ գրաֆիկ. և քանդ. շարժերի վարպետ է: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949, 1951):

ՌԵՇԻԴ ՓԱՇԱ (Reşit Paşa) Մուստաֆա (1800–1858), թուրք պետ. գործիչ, դիվանագետ: 1834–37–ին՝ Օսմ. կայսրության դեսպանը Ֆրանսիայում և Անգլիայում: 1837–45–ին՝ ԱԳ նախարար, 1846–58–ին (6 անգամ)՝ մեծ վեզիր: Նախապատրաստել է Գյուլհանեի ***Հաթթը շերիֆը*** (հրապարակվել է 1839–ի նոյեմբ. 3–ին), որով սկզբնավորվել է ***Թանզիմաթի*** ժամանակաշրջանը:

ՌԵՇՏ, ք. Իրանում, Գիլյան օստանի վարչ. կենտրոնը: Բն.՝ 592,5 հզ. (2010): Մետաքսագործ. շրջանի կենտրոն է (XIV դ–ից): Կա համալսարան:

ՌԵՈԼՈԳԻԱ, գիտ–յուն նյութերի ձևախախտումների և հոսունության մասին. ուսումնասիրում է իրական մարմինների, այդ թվում՝ տարատեսակ թանձր ու պլաստիկ նյութերի դարձելի և ոչ դարձելի ձևափոխություններն ու հոսքերը:

Գրունտների Ռ., դիտարկում է ժամանակի ընթացքում գրունտի լարված. վիճակների առաջացումն ու փոփոխականությունը: Ռեոլոգ. շարժընթացներն առաջանում են սողքերի (ժամանակի ընթացքում հաստատուն բեռնվածության տակ ձևախախտման անընդհատ աճ), ռելաքսացիայի (մշտ. ձևախախտման դեպքում լարվածության անկում զանգվածում) և ամրության նվազման (բեռնվածության ազդեցության տևողության մեծացմամբ գրունտի քայքայման դիմադրության նվազում) տեսքով:

ՌԵՈՄՅՈՒՐ (Réaumur) Ռենե Անտուան (1683–1757), ֆրանսիացի բնախույզ: Ս.Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1737): Աշխ–ները վերաբերում են ռեզնեբացիային, ֆիզիոլոգիային, միջատների գաղութների կենսբ–յանը: Առաջարկել է (1730) իր անունով կոչված ջերմաստիճան սանդղակ, որի 1^o–ը հավասար է մթն. ճնշման պայմաններում ջրի եռման և սառույցի հալման ջերմաստիճանների տարբերության 1/80–ին: $1^oR = 5/4^oC$: Գործնականում չի կիրառվում:

ՌԵՈՍՏԱՏ (< հուն. reos – հոսել և statos – անշարժ, կանգնած), էլ. շղթայում հոսանքի ուժի և լարման կարգավորման սարք. հիմն. մասն ակտիվ էլ. դիմադրությամբ հաղորդիչ տարրն է, որի դիմադրությունը կարելի է փոխել սահուն կամ աստիճանաբար՝ պահանջվող պայմաններին համապատասխան:

ՌԵՉ ՊՈՍՊՈԼԻՏԱ, (լեհ.՝ Rzezpospolita – հանրապետություն), 1569–ի Լյուբլինյան ունիայից մինչև 1795–ը՝ լեհ–լիտվ. պետության պաշտոն. անվանումը: XV դ–ի վերջ–XVIII դ–ում՝ լեհ. պետություն, որը դասային միապետության յուրահատուկ ձև էր:

ՌԵԶԿՈՎ Գրիգորի Անդրեևիչ (1920–1990), ռուս. օդաչու, ավիացիայի գեն–մայոր (1957): ԽՄ հերոս (1943, 1944): ՀՄՊ–ի ժամանակ՝ կործանիչ ավիացիայում էսկադրիլիայի և գնդի հրամ.:

ՌԵՊԱՐԱՑԻԱ, (լատ.՝ reparatio – վերականգնում), 1. (կենսբ.) բջջում ԴՆԹ–ի բնականոն սինթեզի ժամանակ կամ ֆիզ. ու քիմ. ազդակների ներգործությամբ վնասված ԴՆԹ–ի բնականոն կառուցվածքը վերականգնելու շարժընթաց. հատուկ է օրգանիզմների բջիջներին:

2. (Տնտ.) **վնասահատուցում**, պետությանը հասցված վնասների հատուցումը, որը վճարում է հարձակվող երկիրը՝ հաշտության պայմանագրով կամ այլ ակտով: Հատուցման ծավալն ու բնույթը պետք է համապատասխանեն նյութ. վնասին (համաչափության սկզբունք):

ՌԵՊԵՐ (ֆրանս.՝ repere – նիշ, նշան, ելակետ), 1. (գեոդեզիայում) հատուկ նշան, որն արվում է քարե շինության պատին կամ գետնին, տեղանքում նշանակում և սևեռում է այն կետը, որի բարձր–յունը ծ. մ–ից որոշվում է հարթաչափման միջոցով: 2. (Մաթ.) ընդհ. սկզբով 3 (2) վեկտորների համախումբ, որոնք գտնվում են տարբեր հարթություններում և վերցված են որոշակի հերթականությամբ:

ՌԵՊԻՆ Իլյա Եֆիմովիչ (1844–1930), ռուս. գեղանկարիչ: Կեցվածքի, ժեստի, երևույթի հոգեբ. մթն–ի վերարտադրման վարպետությունը հավասարապես դրսևորվել է ժող. կյանքի ընդհանրացված տեսարաններում («Եկեղեցական թափոր Կուրսկի նահանգում», 1880–83), նարոդնիկների կյանքին վերաբերող («Չէին սպասում», 1884–88), պատմ. թեմաներով («Իվան Ահեղը և նրա որդի Իվանը», 1885, «Զապորոժցիները նամակ են գրում թուրք սուլթանին», 1878–91) կտավներում,

ժամանակակիցների դիմանկարներում («Մ. Պ. Մուսորգսկի», 1881, ևն): 1899–ից՝ Կուոկկալայում (այժմ՝ Ռեպինո, 1917–40–ին՝ Ֆինլանդիայի տարածքում):

ՌԵՊԼԻԿԱՑԻԱ. (ուշ լատ.՝ replicatio – կրկնություն), **ռեդուպլիկացիա**, բոլոր կենդանի բջիջներում տեղի ունեցող նուկլեինաթթուների, գեների, քրոմոսոմների ինքնավերարտադրման (ինքնապատճենման) շարժընթացը:

ՌԵՊՆԻՆ Անիկիտա Իվանովիչ (1668–1726), ռուս գեն–ֆլդմ. (1724), Պետրոս I–ի զինակիցը: Հս. պատերազմի ժամանակ՝ դիվիզիայի հրամ.: 1724–25–ին՝ Ռազմ. կոլեգիայի նախագահ:

ՌԵՊՆԻՆ Նիկոլայ Վասիլևիչ (1734–1801), ռուս գեն–ֆլդմ. (1796), դիվանագետ: 1763–69–ին՝ դեսպան Լեհաստանում: 1768–ին կնքել է Վարշավայի պայմանագիրը: 1768–74 և 1787–91–ի ռուս–թուրք. պատերազմների մասնակից: 1791–ին՝ բանակի գլխ. հրամ.: Մեծ դեր է խաղացել 1774–ի Քյուչուկ–Կայնարջիի և 1791–ի Յասիի պայմանագրերի կնքման ժամանակ:

ՌԵՊՐԻԶ (ֆրանս.՝ reprise, < reprendre – վերսկսել), 1. երաժշտ. երկի որևէ մասի կամ հատվածի անփոփոխ (ստատիկ Ռ.) կամ տարբերակային (դինամիկ Ռ.) կրկնությունը (առնատ. ձև ևն): 2. **Կրկեսում**՝ խոսք. կամ մնջախաղ. կոմիկ. համար (երբեմն՝ կատակ, անեկդոտ), նաև ձիու՝ միևնույն քայլքով փոփոխվող հնարքների շարք:

ՌԵՊՐՈԴՈՒԿՑԻԱ. (< *ռե*... և լատ.՝ productio – արտադրել), 1. հոգեբ. հիշողության մեջ պահպանվածի վերհուշը: 2. Կենսբ. օրգանիզմների՝ իրենց նմաններին վերարտադրելու կենսընթացը (*բազմացում*):

ՌԵՋԱՅՆԱ. (Regina), ք. Կանադայի հվ–արմ–ում, Սասկաչևան պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 178,8 հզ. (2010): Խոշոր գղտ. շրջանի կենտրոն է:

ՌԵՋՈ ԴԻ ԿԱԼԱԲՐԻԱ. (Reggio di Calabria), ք–նվինգստ Իտալիայի հվ–ում՝ Մեսինայի նեղուցի ափին, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 186 հզ. (2010):

ՌԵՋՈ ՆԵԼ ԷՄԻԼԻԱ. (Reggio nell'Emilia), ք. Իտալիայի հս–ում, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 177,3 հզ. (2010): Կան IX–XVIII դդ–ի ճարտ. հուշարձաններ:

ՌԵՍԵԼ (Ressel) Յոզեֆ (1793–1857), չեխ գյուտարար: Աշակել է նավի շարժիչ՝ թիակավոր պտուտակ, կառուցել աշխարհում 1–ին թիապտուտակավոր «Չիվետա» շոգենավը:

ՌԵՍԻՍՏԵՆՍԻԱ. (Resistencia), ք. Արգենտինայի հս–արլ–ում՝ Պարանա գետի ափին, *Չակո* պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 403 հզ. (2010): Տարածաշրջանի կազմակերպ. և գործարար կենտրոնն է:

ՌԵՍԻՎԵՐ (անգլ.՝ receicver – ստացող), գազի կամ գոլորշու կուտակման տարողություն, որը նախատեսված է հիմնականում խողովակաշարում ճնշման տատանումները հարթելու համար: Ճնշասարքերում ծառայում է նաև գազերը սառեցնելու համար: Ջերմամեքենաներում Ռ. ջերմամեկուսացված խողովակ է, որը միացնում է բարձր և ցածր ճնշումների գլանները:

ՌԵՍԻՖԻ (Recife), **Պեռնամբուկու** (Pernambuco), ք–նվինգստ Բրազիլիայի հս–արլ–ում՝ Ատլանտ. օվկ–ի ափին, Պեռնամբուկու նահանգ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,56 մլն (արվարձաններով՝ 3,85 մլն, 2010): Ունի օդանավակայան: Զարգացած է SS ոլորտը (համակարգչ. ծրագրերի ևն): Զբոսաշրջային կենտրոն է: Հիմնադրվել է 1548–ին: Կան գաղութ. շրջանի ճարտ. հուշարձաններ:

ՌԵՍԿՐԻՊՏ (լատ.՝ rescriptum, < rescribo – պատասխանել գրավոր), 1. Հին Հռոմում կայսեր՝ օրենքի ուժ ունեցող պատասխանը՝ նրա դատին հանձնված հարցին: 2. Կայսեր հանձնարար. ակտը՝ ուղղված որևէ նախարարի կամ այլ պաշտոնատար անձի:

ՌԵՍՊԻԳԻ (Respighi) Օտտորինո (1879–1936), իտալացի կոմպոզիտոր: Իտալացի նշանավոր սիմֆոնիստներից: Հեղինակ է օպերաների («Բելֆագոր», 1923, ևն), բալետի, սիմֆ. («Հռոմի շատրվանները», սիմֆ. եռերգություն, 1916, «Հռոմեական տոնախմբություններ», 1928, ևն), կամերգործիք. երկերի, «Գարուն» քնար. պոեմի (ըստ Կ. Զարյանի «Երեք երգ»–ի, երգչախմբի, նվագախմբի, մենակատարների համար, 1923), ռոմանսների և երգերի (ըստ Վ. Հյուգոյի, Կ. Զարյանի, Ներսես Շնորհալու և ուր.):

«ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ ԱՐՄԵՆԻԱ» («Республика Армения» – «Հայաստանի Հանրապետություն»), հաս–քաղ. եռօրյա թերթ (1990–ից, Երևան՝ ռուս.): Մինչև 2000–ը՝ ՀՀ ԱԺ պաշտոնաթերթ: Խմբ–ներ՝ Բորիս Նավասարդյան, Տիգրան Հակոբյան, Աշոտ Մելիքյան, Արմեն Խանբաբյան, Շամիրամ Աղաբեկյան, Վարդան Ալոյան, Ելենա Կուրդիյան (2004–ից):

ՌԵՍՏԱՎՐԱՑԻԱ Ֆրանսիայում, *Բուրբոնների* (գահազրկվել էին XVIII դ–ի վերջին՝ Ֆրանս. մեծ հեղ–յան հետևանքով) 2–րդ կառավարման ժամանակաշրջանը: Տարբերում են 1–ին (1814–15) և 2–րդ (1815–30) Ռ–ների շրջաններ. իրարից անջատված են *«Հարյուր օր»*–ով (Նապոլեոն Բոնապարտի 2–րդ կառավարման ժամանակաշրջանը): Ռ–ի վարչակարգը տապալվել է 1830–ի հուլիսին (տես *Հուլիսյան հեղափոխություն 1830*):

ՌԵՍՏԵՆ Միքայել (Պատկանյան Միքայել Պետրոսի, 1755–1844), բժիշկ: Սերովբե *Պատկանյանի* եղբայրը: 1799–1818–ին աշխատել է Իտալիայի քաղաքներում, ապա տեղափոխվել Եգիպտոս, զբաղվել բժշկությամբ: Վենետիկում լույս է ընծայել «Բժշկականութիւն» (հ. 1–2, 1822, լրացումներով վերահրտ.՝ 1832) աշխ–ը: 1–ին հատորը տարբեր հիվանդությունների կլինիկ. պատկերի և պատճառների ու բուժման մասին է, 2–րդը բժշկ. տերմինների (2506) բացատր. բառարան է: 1833–ին Պոլսում գրել է «Կրթութիւն բժշկական արուեստի» (մաս 1–6, 1833–41) աշխ–ը:

ՌԵՍՏԻՏՈՒՑԻԱ. (լատ.՝ restitutio – վերականգնում), 1. (քաղաքաց. իրավունք) իրավ., գույք. վիճակի վերականգնումը: Լինում է միակողմ (կիրառվում է կողմերից մեկի նկատմամբ) և երկկողմ (2 կողմերի նկատմամբ): 2. (Միջազգ. իրավունք) պատերազմի ժամանակ անօրինականորեն հակառակորդ պետությունից զավթած և նրա տարածքից արտահանած գույքի վերադարձը: 3. Երկրում սոցիալ–քաղ. փոփոխությունների ընթացքում օտարված գույքի վերադարձը:

ՌԵՍՏՐԻԿՏԱՋՆԵՐ, **ռեստրիկցիաներ**, ֆերմենտներ, ԴՆԹ առանձնահատուկ ճեղքող բակտերիային նուկլեազների խումբ: Բակտերիային բջիջները պահպանում են օտարածին (օր.՝ վիրուս.) ԴՆԹ–ից: Լայնորեն օգտագործվում են ԴՆԹ–ի առաջնային կառուցվածքը որոշելիս՝ գեների քարտագրման և գենային ճարտարագիտ–յան մեջ՝ հիբրիդ. ԴՆԹ–ի ստեղծման ու կլոնավորման համար:

ՌԵՎԱԶՅԱՆ Ռոբերտ Հայկի (ծ. 1937), էկոլոգ: Աշխարհագր. գիտ. դ–ր (2002): Աշխ–ները վերաբերում են կենսաերկրաքիմ. պարբերաշրջաններին, քիմ. տարրերի տեղաշարժի և շրջանառության հարցերին: Սկսակել է էկոհամակարգերի իրավիճակի գնահատման եղանակներ, աղտոտված հողերի թունազերծման և հակազտիչ արգելքների նոր տեխնոլոգիաներ:

ՌԵՎԱԼՎԱՑԻԱ. (< *ռե*... և լատ.՝ valere – նշանակություն, արժեք ունենալ), **վերաարժևորում**, երկրի դրամ. միավորի՝ ոսկու պաշտոն. պարունակության ավելացում կամ կուրսի փաստացի բարձրացում: Բնույթով հակադիր է *դևալվացիային*:

ՌԵՎԱՆՇԻԶՄ (ֆրանս.՝ revanchisme, < revanche – հատուցել, վրեժխնդիր լինել), պատերազմում պարտություն կրած երկրի շովինիստ. շրջանների քաղ–յունը, որը հետապնդում է նոր պատերազմի նախապատրաստում, նախապատերազմյան սահմանները և միջպետ. հարաբերությունները վերականգնելու նպատակով:

ՌԵՎԵՐՍ (անգլ.՝ reverse, < լատ. revertator – հետ շրջել, հետ դառնալ), դարձափոխ. մեխանիզմ, որը ծառայում է մեքենայի (կամ նրա առանձին տարրերի) շարժումը հետ շրջելու համար:

ՌԵՎԵՐՍԻԱ. (լատ.՝ reversio – վերադարձ, հետադարձ), 1. մուտացված գենի անցումը ելակետային (վայրի) տիպի (հետադարձ. կամ վերադարձ. մուտացիա): 2. **Բույսերի Ռ.,** տարբեր գենոտիպային բաղադրիչներով բույսերում (օր.՝ քիմեռներում) մոտ բաղադրիչներից մեկին բնորոշ ընձյուղների ի հայտ գալը: Տես նաև *Առհավություն*:

ՌԵՎԵՐՏԱՋ, հետադարձ տրանսկրիպտազ. ֆերմենտ, որը մասնակցում է ՌՆԹ–ի մատրիցի վրա ԴՆԹ–ի սինթեզին:

ՌԵՎԻԶԻՈՆԻԶՄ (լատ.՝ revisio – վերանայում), գաղափարաքաղ. և գիտ. այնպիսի հոսանք, որը վերանայում և վերաքննում է որևէ տեսության, հայեցակարգի կամ ուսմունքի սկզբունքներն ու դրույթները:

ՌԵՎՄԱՏԻԶՄ (հուն.՝ rheumatismos – բառացի՝ հոսք, հոսել), **Բույո–Սոկոլսկու հիվանդություն, ռևմատիկ տենդ**, սուր հոդային ռևմատիզմ, վարակ–ալերգ. հիվանդություն. բնորոշվում է հիմնականում սիրտանոթ. համակարգի և հոդերի շարակց. հյուսվածքի տարածուն ախտահարմամբ (տես *Կոլագենային հիվանդություններ*): Դրսևորումները՝ ռևմատիկ բազմահոդաբորբի ժամանակ՝ ջերմաստիճանի բարձրացում, հոդերի այտուցվածություն, խիստ ցավոտություն: Գլխուղեղի Ռ. կարող է ուղեկցվել *խորեայով*: Տես նաև *Ռևմոկարդիտ*: Հիվանդության ընթացքը հիմնականում քրոնիկական է՝ սրացումներով («գրոհներով»):

ՌԵՎՄՈԿԱՐԴԻՏ, սրտի բորբոք. ախտահարումը *ռևմատիզմի* ժամանակ: Կարող է ընդգրկել սրտի ներքին (էնդոկարդիտ), մկան. (միոկարդիտ) և արտաքին (պերիկարդիտ) շերտերը: Դրսևորվում է ընդհ. թուլությամբ, մարմնի ջերմաստիճանի բարձրացմամբ, սրտխփոցով, սրտի ցա-

վերով, հևոցով ևն: Հաճախ հանգեցնում է սրտի արատների:

«ՌԵՎՅՈՒ ԴԵԶ ԷԹՅՈՒԴ ԱՐՄԵՆԻԵՆ» («Revue des études arméniennes» – «Հայագիտական ուսումնասիրությունների հանդես»), հայագիտ. տարեգիրք (1920–ից, Փարիզ, հոդվածները՝ ֆրանս., անգլ., գերմ., 1934–63–ին չի տպագրվել): Հիմնադրել են Ֆ. *Մակլերն* ու Ա. *Մեյեն*: 1964–ից տնօրեններ՝ Էմիլ Բենվենիստ, Ժորժ Դյումեզիլ, Սիրարփի Տեր–Ներսեսյան, Նինա Գարսոյան, քարտուղարներ՝ Հայկ Պերպերյան, Ժան–Պիեռ Մահե, Կառլես դը Լամբերտերի:

«ՌԵՎՅՈՒ ԴԻՄԹՈՒԱՐ ԱՐՄԵՆԻԵՆ ԿՈՆՏԱՄՊՈՐԵՆ» («Revue d'histoire arménienne contemporaine» – «Արդի հայոց պատմության հանդես»), հայագիտ. տարեգիրք (1995–ից, Փարիզ՝ ֆրանս.): *Նուբարյան մատենադարանի* հրտ–յուն: Խմբագր. խորհուրդ՝ Ռայմոն–Հարություն Գևորգյան (տնօրեն), Վահագն Տատրյան, Արմեն–Կլող Մութաֆյան և ուր.:

«ՌԵՎՅՈՒ ԴՅՈՒ ՄՈՆԴ ԱՐՄԵՆԻԵՆ ՄՈԴԵՌՆ Է ԿՈՆՏԱՄՊՈՐԵՆ» («Revue du monde arménien moderne et contemporain» – «Ժամանակակից հայկական աշխարհի հանդես»), հայագիտ. տարեգիրք (1994–2001, Փարիզ՝ ֆրանս.): Հայկ. ուսմանց ընկ–յան հրտ–յուն:

ՌԵՎՈԼՎԵՐ (անգլ.՝ revolver, revolve – պտտվել), անհատ., ոչ ավտոմատ բազմալիցք հրազեն. ատրճանակի տեսակ: 1–ին նմուշները պատրաստվել են XVI դ–ում: 1810–30–ական թթ–ին արտադրվել է Կոլտի (ԱՄՆ), XIX դ–ի վերջին՝ Սմիթ Վենսոնի համակարգի Ռ., որը 1895–ին փոխարինվել է Նագանի Ռ–ով: Ինքնաձիգ ատրճանակների ի հայտ գալով՝ Ռ–ի գործածությունը սահմանափակվել է, ապա հանվել սպառազինությունից:

ՌԵՎՈՒՑԿԻ Լև (Լևկո) Միկոլաևիչ (1889–1977), ուկրաինացի կոմպոզիտոր, հաս. գործիչ: ԽՍՀՄ ժող. արտիստ (1944): Ուկր. ԽՍՀ ԳԱ ակադ. (1957): Սոց. աշխ. հերոս (1969): Հեղինակ է սիմֆ., վոկալ և այլ գործերի:

ԽՍՀՄ (1941), Տ. Շևչենկոյի անվ. Ուկր. ԽՍՀ (1966) Պետ. մրց–ներ:

ՌԵՏԻԿ (Rhäticus, իսկական անունը՝ Գեորգ Յոաիմ ֆոն Լաուխեն, 1514–1576), գերմանացի աստղագետ և մաթեմատիկոս: Ն. *Կոպեռնիկոսի* աշակերտն ու հետևորդը: Կոպեռնիկոսի աշխ–յան հրտ–յունից առաջ (1543) տպագրել է նրա ուսմունքի համառոտ շարադրանքը (1541): Մաթ. աշխ–ները վերաբերում են եռանկյունաչափ. ֆունկցիաների արժեքների հաշվմանը:

ՌԵՏԻՆ (լատ.՝ resina – խեժ), ճկուն նյութ, ռետինացված կաուչուկ: Պարունակում է նաև լցանյութեր, պլաստիկարարներ, կայունարարներ, ծակոտագոյացիչներ և այլ բաղադրամասեր: Ռ–ի հիմն. մասն օգտագործվում է դողերի (50 %–ից ավելի) և ռետինատեխ. իրերի (մոտ 22 %) արտադր–յան մեջ:

ՌԵՏԻՆԱՅՈՒՄ, **վուլկանացում**, կաուչուկի փոխարկումը ռետինի, կատարվում է ռետինացնող նյութերով (ծծումբ, օրգ. գերօքսիդներ, որոշ սինթետիկ խեժեր), իոնացնող ճառագայթների ազդեցությամբ ևն: Ռ–ման արդյունքում մեծանում են կաուչուկի ամրությունը, պնդությունը, ճկունությունը, ջերմա– և սառնակայունությունը, փոքրանում է նրա լուծելիությունն օրգ. լուծիչներում:

ՌԵՏՈՌՈՄԱՆՅԻՆԵՐ, ժողղ–ների խումբ Իտալիայի հս–արլ–ում և Շվեյցարիայի հվ–արլ–ում (ռոմանշներ): Ընդհ. թիվը՝ 725 հզ. (2010): Լեզուն՝ ռետոռոման.:

ՌԵՏՐՈԱԿՏԻՎ ԱՐԳԵԼԱԿՈՒՄ (< լատ. retro – հետադարձ և activus – գործուն), մոռացման պատճառ, երբ նոր նյութի յուրացումը դժվարացնում է նախկինում սերտածի վերարտադր–յունը: Պարզվել է, որ սերտման ընթացքում Ռ. ա. փոքրանում է, երբ իրար հաջորդող գործունեության 2 ձևերի մեջ ուս. նյութը զննական է և կոնկրետ, իմաստալից և բնույթով տարբեր: Ռ. ա–ման առաջին փորձն. հետազոտությունները կատարել են գերմանացի հոգեբաններ Գ. Մյուլլերը և Ա. Պիլցեկերը 1900–ին, լայնորեն ճանաչվել է ամերիկացի հոգեբան Դե Կամպի ուսումնասիրություններով:

ՌԵՏՐՈՎԻՐՈՒՄՆԵՐ (< լատ. retro – հետադարձ և *վիրուսներ*), ԴՆԹ պարունակող վիրուսների ընտանիք: Հայտնաբերվել է մարդու, բոլոր ողնաշարավորների և որոշ անողնաշարների մոտ: Ռ–ի առանձնահատկությունը կենս. ցիկլում հետադարձ տրանսկրիպցիայի (ԴՆԹ–ի սինթեզը ՌՆԹ–ի մատրիցի վրա) առկայությունն է: Ռ. քաղցկեղածին են. առաջացնում են լեյկոզներ, սարկոմաներ, կաթնագեղձի ուռուցքներ ևն:

ՌԵՏՈՒՇ (ֆրանս.՝ reteuche), պատկերների (նկար, լուսանկար ևն) մշակում մատիտով կամ ներկով, որոշ հատվածների քերման կամ քիմ. մշակման (լուսանկարչ. շերտի խածատում) ճանապարհով: Պոլիգրաֆիայում կիրառում են բնագրի պատրաստման և սևանկարի ու թափանցապատկերների մշակման նպատակով՝ տպաճևեր պատրաստելուց առաջ: Ժամանակակից Ռ. կատարվում է համակարգչ. տեխնիկայով:

ՌԵՐԻԽ Ելենա Իվանովնա (1879–1955), ռուս կրոն. փիլ.: Ն. Կ. *Ռերիխի* կինը, Ս. Ն. *Ռերիխի* մայրը: Սշակել է ազնի–յոգան կամ ուսմունք կենդանի բարոյագիտ–յան մասին (1924–ից՝ Հնդկաստանում), որի հիմքում հնդ. հոգևոր ավանդույթներն են:

ՌԵՐԻԽ, Յուրիխ, Նիկոլայ Կոնստանտինովիչ (1874–1947), ռուս. գեղանկարիչ, բեմանկարիչ, հնագետ, ճանապարհորդ, գրող: Ե. Ի. *Ռերիխի* ամուսինը, Ս. Ն. *Ռերիխի* հայրը: 1920–ից՝ արտերկրում: Հեղինակ է հինռուս. պատմությանը («Սուրհանդակ», 1897), հնդ., տիբեթ. դից–յանը («Հիշիր», 1945), բնությանը նվիրված կոմպոզիցիաների: 1924–28–ին (որդու՝ Յ. Ն. Ռերիխի հետ) և 1934–35–ին հնագիտ. արշավներ է կատարել Հնդկաստանում, Չինաստանում, Մոնղոլիայում և այլուր: Նագարում հիմնադրել է Հիմալայի հետազոտ. ինստ–ը («Ուրուսվատի», 1929–42, Յ. Ն. Ռերիխի հետ): Հեղինակ է «Մորու ծաղիկները» (1921) բանաստեղծությունների, «Օրհնության ճանապարհ» (1924) էսսեների և ակնարկների, «Ալթայ–Հիմալայ» օրագրության (1974, երկուսն էլ՝ ռուս.) ժող–ների: Մոսկվայում հիմնադրվել է Ռ–ների միջազգ. կենտրոն (1991, վերափոխվել է Ռ–ի խորհրդ. հիմնադրամի):

«Ռունդյան լեռներ», «Հսկաների ուղին» կտավները ՀԱՊ–ում են:

ՌԵՐԻԽ, Յուրիխ, Սվյատոսլավ Նիկոլաևիչ (1904–1993), ռուս. գեղանկարիչ: ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի պատվ. անդամ (1978): Ե. Ի. և Ն. Կ. *Ռերիխների* որդին: Ապրել է Հնդկաստանում: Հեղինակ է դիմանկարների, բնանկարների («Հիմալայ: Արևի մայրամուտը», 1937, ևն), խորհրդանշ. կոմպոզիցիաների:

«ՌԵՐՈՒՄ ՆՈՎԱՐՈՒՄ» [լատ.՝ «Rerum novarum…» – «Նոր իրեր (եմ քննում)…» տեքստի առաջին բառերը], Լևոն XIII պապի *Էնցիկլիկան* (1891), որը հայտնի է որպես կաթոլիկության սոցիալ. քաղ–յունն սկզբնավորող 1–ին փաստաթուղթ: «Ռ. ն.» սրբագործել է մասնավոր սեփականությունը, դասակարգ. անհավասարությունը, կոչ արել եկեղեցու հսկողությամբ ստեղծել կղեր. բանվ. կազմ–յուններ: Դատապարտել է *սոցիալիզմը*:

ՌԵՑԵՊՏՈՐՆԵՐ, տես *Ընկալիչներ*:

ՌԵՑԵՍԻՎԱՍԹՅՈՒՆ (լատ.՝ recessus – նահանջ), 2 ալելային գեների փոխհարաբերության ձև, որի դեպքում նրանցից մեկը՝ ընկճվածը կամ թաքնվածը (ռեցեսիվը), առանձնյակի համապատասխան հատկանիշի վրա ավելի կամ պակաս ուժով է դրսևորվում, քան գերիշխողը (դոմինանտը):


ՌԵՈՒՏՈՎ Ալեքսանդր Պավլովիչ (1926–2012), տեղեկատվ. համակարգերի բնագավառի ռուս. գիտնական: ՌԳԱ թղթ. անդամ (1987): Աշխ–ները վերաբերում են տեղեկատվ. համակարգերի և տեղեկույթի մշակման օպտոէլեկտրոն. սարքավորումների ստեղծմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1978):

ՌԵՈՒՏՈՎ Օլեգ Ալեքսանդրովիչ (1920–1998), ռուս. քիմիկոս–օրգանիկ: ՌԳԱ ակադ. (1964): Աշխ–ները վերաբերում են մետաղօրգ. միացությունների քիմիային, հոմոլիտիկ և էլեկտրոֆիլ ռեակցիաների մեխանիզմներին:

Լենինյան (1984), ԽՍՀՄ ԳԱ Ա. Մ. Բուտլերովի անվ. (1961) մրց–ներ:

ՌԵՔՎԻԵՄ (լատ.՝ «Requiem aeternam dona eis, Domine» – «Հավերժ հանգիստ տուր նրանց, Տեր» տեքստի առաջին բառից), հոգեհանգստի մեսսա: Մի շարք կոմպոզիտորներ Ռ–ի ավանդ. լատ. տեքստով գրել են երաժշտություն (Վ. Ա. Մոցարտ, Հ. Բեռլիոզ, Ֆ. Լիստ, Ջ. Վերդի, Ա. Գ. Շնիտկե և ուր.): Ռ–ներ են գրել նաև Ա. Հարությունյանը, Ա. Ադճեմյանը, Տ. Մանսուրյանը, Ռ. Սարգսյանը, Ա. Բաբայանը, Վ. Բալյանը, Գ. Չթչյանը, Մ. Մավիսակալյանը և ուր.: Գրկ–յան մեջ ստեղծագործության ողբերգականությունն ընդգծելու համար գրողներն իրենց գործերը հաճախ անվանել են Ռ.: Հայտնի են Ա. Ախմատովայի, Մ. Ցվետաևայի պոեմները, Մ. Մարինինայի վեպը, հայ գրկ–յան մեջ՝ Վ. Դավթյանի, Ռ. Դավոյանի և ուր. պոեմները:

ՌԵՖԼԵԿՏՈՐ (լատ.՝ reflecto – անդրադարձնել), 1. **ցոլարձակ**, ալեցրի կամ ճառագայթման այլ աղբյուրի (ընդունիչի) անդրադարձիչը կամ հայելին: 2. Հայել. օբյեկտիվով աստղադիտակ, որտեղ երկնս. լուսատուների պատկերներն ստացվում են լուս. ճառագայթների անդրադարձման միջոցով: Օգտագործվում է հիմնականում երկնքի լուսանկարահանման, լուսաէլ. և սպեկտր. հետազոտության համար: Բյուրականի աստղադիտարանում գործում են 20–50 *սմ* տրամագծով Ռ–ներ: Աշխարհի խոշորագույն Ռ–ի գլխ. հայելու տրամագիծը 6 *մ* է (ՌԴ): 3. Կենցաղում տարածված ԵԿՁ–ով տաքացուցիչի կենցաղ. անվանումներից:



Աստղադիտակ-ռեֆլեկտորների սխեմաներ. ա. Նյուտոնի, բ. Գրեգորի, գ. Կասերգրենի, ԳՀ – պարաբոլային գոգավոր հայելի, $O_կ$ – օկուլյար:

ՌԵՖԼԵՔՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ռեֆլեքսոլոգիա, գիտ. ուղղություն հոգեբ-յան մեջ: Տարածվել է 1900–20-ական թթ-ին, հիմնականում՝ Ռուսաստանում, և կապված է Վ. Մ. *Բեխտերևի* գործունեության հետ:

ՌԵՖԼԵՔՍԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, ռեֆլեքսաթերապիա, մարմնի մակերևույթի՝ նյարդ. վերջույթներով հարուստ որոշակի գոտիների (կենսբ. ակտիվ կետեր) գրգռման վրա հիմնված բուժիչ գործելաոճերի և մեթոդների ընդհ. անվանումը: Ներառում է նաև ասեղնածակումը (ակուպունկտուրա) և էլեկտրածակումը (էլեկտրապունկտուրա) ևն:

ՌԵՖԼԵՔՍԱՅԻՆ ԱՂԵՂ, նյարդ. աղեղ, ռեֆլեքսին մասնակցող նյարդ. գոյացությունների ամբողջություն: Ընդգրկում է ընկալիչներ, կենտրոնաձիգ (աֆերենտ) նյարդաթելեր, նյարդ. կենտրոն, կենտրոնախույս (էֆերենտ) նյարդաթելեր, կատարող օրգաններ (մկաններ, գեղձեր ևն):

ՌԵՖԼԵՔՍՆԵՐ (լատ.՝ reflexus – հետշրջված, անդրադարձված), օրգանիզմի հակազդեցությունը՝ ընկալիչների գրգռմանն ի պատասխան: Առաջացած դրդումը փոխանցվում է ԿՆՀ, որը պատասխանում է նրան նույնպես դրդմամբ. վերջինս կենտրոնախույս (շարժիչ, ներգաձիչ ևն) նյարդերով փոխանցվում է տարբեր օրգաններ (մկաններ, գեղձեր ևն): 1863-ին Ի. Մ. *Սեչենովը* նկատել է, որ «գիտակցական և ոչ գիտակցական կյանքի բոլոր գործողությունները, ըստ ծագման եղանակի, ոչ այլ ինչ են, եթե ոչ ռեֆլեքսներ»: Այս դրույթը հետագայում զարգացրել է Ի. Պ. *Պավլովը* բարձրագույն նյարդ. գործունեության վերաբերյալ իր ուսմունքում: Ռ. Պավլովը բնածին կոչել է անպայման, իսկ կյանքի ընթացքում մշակվածները՝ պայմանական: Ռ-ի վերաբերյալ պատկերացումներն ուսումնասիրել են նաև Լևոն *Օրբելին*, Էդրաս *Հասրաթյանը* և ուր.:

ՌԵՖԼՅՈՒՔՍ (միջնադարի լատ.՝ refluxus – հետադարձ հոսք), սնամեջ օրգաններում (մարսողության, միզարտադրության համակարգերի ևն) հեղուկի տեղաշարժը հակառակ (հակաֆիզիոլոգ.) ուղղությամբ (օր.՝ ստամոքսի պարունակության հետշպրտումը կերակրափողի մեջ՝ ստոծանու ճողվածքի ժամանակ):

ՌԵՖՈՐՄ (լատ.՝ reform – փոխակերպել), բարեփոխում, հաս. կյանքի որևէ կողմի (կարգերի, ինստ-ների, հիմնարկների ևն) վերափոխում, փոփոխություն, վերակառուցում, որը չի ոչնչացնում գոյություն ունեցող սոցիալ. կառուցվածքի հիմքերը: Ձևական առումով՝ որևէ բովանդակության նորամուծություն Ռ. է [տնտ. Ռ., ագրար. Ռ., կրոն. Ռ. (օր.՝ կաթոլիկության Ռ.՝ *ռեֆորմացիա*), քաղ. Ռ., մշակութ. Ռ. ևնլ: Քաղ. պրակտիկայում և քաղ. տեսության մեջ սովորաբար «Ռ.» են կոչվում քիչ թե շատ առաջադիմ. վերափոխությունները:

ՌԵՖՈՐՄԱՏԱԿԱՆՆԵՐ, XVI դ-ի Ռեֆորմացիայի հետևանքով առաջացած եվրոպ. մայրցամաք. ծագում ունեցող կալվին. եկեղեցիների հետևորդներ՝ ի տարբերություն անգլ. և շոտլանդ. կալվինիստների (տես *Պրեսբիտերականներ* և *Ինդեպենդենտներ*):


ՌԵՖՈՐՄԱՏՍԿԻ Սերգեյ Նիկոլաևիչ (1860–1934), ռուս. քիմիկոս-օրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1929): Աշխ-ները վերաբերում են մետաղօրգ. միացությունների սինթեզին: Առաջարկել է բետա-հիդրօքսիկարբոնաթթուների սինթեզի եղանակ (տես Ռ-ի ռեակցիա): Հեղինակ է «Օրգանական քիմիայի սկզբնական դասընթաց»-ի (1893):

ՌԵՖՈՐՄԱՏԻԱ (լատ.՝ reformatio – վերափոխում, ուղղում), հաս-քաղ., գաղ. լայն շարժում կաթոլիկ եկեղեցու դեմ (ըստ էության՝ հակաավատ. շարժում) Արմ. և Կենտր. Եվրոպայում XVI դ-ում: Նեղ իմաստով՝ կրոն. վերափոխումներ *բողոքականության* ոգով: Սկսվել է Գերմանիայում [Մ. Լյութերի ելույթով (1517-ի հոկտ. 31)]: Ռ-ի գաղափարախոսները հավատի աղբյուր են հռչակել միայն Աստվածաշունչը՝ մերժելով «սուրբ ավանդությունը» (եկեղեցու ժողովների որոշումներ, եկեղեցու հայրերի ստեղծագործություններ ևն): Ռ. ուղեկցվել է եկեղեց. հողերի բռնագրավմամբ: «Վերևից» իրականացվող Ռ. նույնպես ուղեկցվել է եկեղեցու հողերի բռնագրավմամբ՝ հոգուտ աշխարհիկ իշխանության: Ռ-ի գաղ. ազդեցությամբ են տեղի ունեցել 1524–26-ի Գյուղաց. պատերազմը Գերմանիայում, նիդեռլ. և անգլ. հեղ-յունները: Ռ-ով է սկզբնավորվել բողոքականությունը:

ՌԵՖՈՐՄԻԶՄ, բանվ. շարժման մեջ քաղ. հոսանք, որը ժխտել է դասակարգ. պայքարի, սոց. հեղ-յան և պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտությունը, հանդես է եկել դասակագերի համագործակցության օգտին: Առաջացել է XIX դ-ի վերջին քառորդում, երբ մի շարք ս-դ. գործիչներ (Է. Բեռնշտայն, Գ. Ֆոլմար, Ա. Միլլերան և ուր.) հանդես եկան մարքսիզմի վերանայման և բուրժ. հասարակարգի բարեփոխման ու աստիճանաբար սոցիալիզմի «ներաճման» ուղի վերցնելու պահանջով: Հոկտ. հեղ-յունից և ԱՀՊ-ից հետո մարքսիզմի և Ռ-ի հակամարտությունը վերածվել է բանվ. շարժման կազմակերպորեն ձևավորված քաղ. 2 հոսանքների միջև մղվող պայքարի: 1951-ին ստեղծվել է Սոց. ինտերնացիոնալը:

ՌԵՖՐԱԿՏԱՉՓՈՒԹՅՈՒՆ, միջավայրի ո բեկման ցուցիչի չափման միջոցների և եղանակների ամբողջությունը: Չափում են լույսի բեկման ներքին լրիվ անդրադարձման անկյունները, ինտերֆերենցիայի, լուսաչափության (2 միջավայրերի բաժանման սահմանում անդրադարձման գործակցի կախումը բեկման ցուցիչների հարաբերությունից), ինչպես նաև խորասուզումային (իմերսիոն) և ստվերային (ո-ի անկման չափումն անհամասեռ միջավայրերում) եղանակներով:

ՌԵՖՐԱԿՏՈՐ (աստղագիտ.), աստղադիտակ, որտեղ լուսատուի (Արեգակ, աստղեր ևն) պատկերն ստեղծվում է ոսպնյակ. օբյեկտիվում լուս. ճառագայթների բեկումով:



Ճառագայթների ընթացքն աստղադիտակ-ռեֆրակտորում. $O_բ$ – օբյեկտիվ, $O_կ$ –օկուլյար, աստղադիտակի խոշորացումը հավասար է φ/φ′:

ՌԵՖՐԻԺԵՐԱՏՈՐ (լատ.՝ refrigerato – սառեցնել), **սառնոց**, սառեցնող սարքավորանքով փոխադրամիջոց (ավտոմեքենա, գնացք, նավ)՝ արհեստ. սառեցումով ցածր ջերմաստիճաններում մթերք տեղափոխելու համար:

ՌԱԶԻ Աբբասի (մոտ 1570–1635), իրանցի մանրանկարիչ: Սպահանի մանրանկարչության դպրոցի հիմնադիրը, գծանկարի վիրտուոզ վարպետ: Հեղինակ է ներդաշնակ, նուրբ գեղանկարչ. գործերի («Մորթե գլխարկով աղջիկը», 1602–03), արտահայտիչ դիմանկարների («Ծերուկը», 1614):

ՌԱԴՈՒԼԵՍԿՈՒ (Rădulescu) Միհայ (1936–2009), ռումին գրող, գրականագետ, թարգմանիչ, հայագետ: Հեղինակ է «Անգլիական բառարանի թակարդները» (համահեղ., 1967) գրքի, «Շեքսպիրը՝ արդի հոգեբան» (1979) գրականագիտ. աշխ-յան: 1972-ին այցելել է Հայաստան, բանաստեղծություններ նվիրել Գեղարդին, Սարդարապատին, հոդվածներում անդրադարձել է Հայ եկեղեցուն, Գրիգոր Նարեկացուն, Ներսես Շնորհալուն, հայկ. մանրանկարչությանն ու ճարտ-յանը, երաժշտությանը:

ՌԱԺԵՇՈՏԱՐՍԿԻ (Rzeszotarski) Ալֆոնս Ալեքսանդրովիչ (1847–1904), լեհ մետաղագործ և մետաղագետ: Ուսումնասիրել է երկաթի, պողպատի և թուջի միկրոկառուցվածքը տարբեր տեսակների մեխ. և ջերմ. մշակումների ժամանակ: Կազմակերպել է Ռուսաստանում առաջին մետաղարան. լաբորատորիան (1895):

ՌԻԲԱԼԿՈ Պավել Սեմյոնովիչ (1894–1948), խորհրդ. զրահատանկ. զորքերի մարշալ (1945): ԽՄ հերոս (1943, 1945): ՀՄՊ-ի ժամանակ՝ տանկ. և զվարդ. տանկ. բանակների, 1947–48-ին՝ զրահատանկ. զորքերի հրամ.:

ՌԻԲԱԼՉԵՆԿՈ Ստեպան Դմիտրիևիչ (1903–1986), խորհրդ. ավիացիայի գեներալ-գնդ. (1944): ՀՄՊ-ի ժամանակ՝ Լենինգրադի ռազմաճակատի շտաբի պետ և ՌՕՈՒ գլխ. հրամ.: Պատերազմից հետո՝ ՌՕՈՒ ռազմ. օկրուգի հրամ., ՋՈՒ ՌՕՈՒ-ի գլխ. տեսուչի տեղակալ:

ՌԻԲԱԿ (Rybák) Յոզեֆ (1904–1992), չեխ գրող: Հեղինակ է սոցիալ. թեմայով «Հարյուրամյակն սկսվում է» (1932) և այլ վեպերի, «Բորիկ ոտքերի ժամանակը» (1973) պատմվածքների, «Երկար գիշերներ» (1971), «Թռչող ափսեն ձմեռային երկնքում» (1980) բանաստեղծությունների ժող-ների:

ՌԻԲԱԿ Նաթան Սամոյլովիչ (1912/13–1978), ուկրաինացի գրող: 1930-ական թթ-ի պատմ. արձակի վարպետ: Հեղինակ է «Օնորե դը Բալզակի սխալը» (1940, վերամշկ. հրտ.՝ 1956, կինոնկար՝ 1969) պատմակենսագր., «Պերեյասլավի Ռադան» (գիրք 1, 2, 1948, 1953, հայ.՝ հ. 1, 2, 1954, 1956) պատմ., «Հույսերի և իրա-

կանացումների ժամանակը» (մաս 1–3, 1960–65) վեպերի և այլ գործերի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

ՌԻԲԱԿՈՎ Անատոլի Նաումովիչ (1911–1998), ռուս գրող: Հեղինակ է «Վարորդները» (1950), «Եկատերինա Վորոնինա» (1955), «Ծանր ավազ» (1978), «Արբատի զավակները» (1987, հայ.՝ 1988), «35 և մյուս թվականները» (գիրք 1, 1988, հայ.՝ 1990, գիրք 2, «Վախ», 1990, գիրք 3, «Աճյուն և մոխիր», 1994) վեպերի, «Սուսերը» (1948, հայ.՝ 1965), «Կրոշի արկածները» (1960, հայ.՝ 1966) և այլ վիպակների, «Վեպ-հուշագրություն» (1997) ինքնակենսագր. գրքի: 1933–36-ին անհիմն բռնադատվել է: ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ՌԻԲԱԿՈՎ Բորիս Ալեքսանդրովիչ (1908–2001), ռուս հնագետ և պատմաբան: ՌԳԱ ակադ. (1958): Սոց. աշխ. հերոս (1978): 1956–87-ին՝ Հնագիտ-յան (1987–2001-ին՝ պատվ.), 1967–71-ին, միաժամանակ՝ ԽՍՀՄ պատմության ինստ-ի տնօրեն: Հիմն. աշխ-ները վերաբերում են արլ. սլավոնների և Հին Ռուսիայի հաս-տնտ. և քաղ. պատմությանը: ԽՍՀՄ Պետ. (1949, 1952), Լենինյան (1976) մրց-ներ:

ՌԻԲԵՅՐԱՆ ՊՐԵՏՈՒ (Ribeirão Prêto), ք. Բրազիլիայի Սան Պաուլու նահ-ում: Բն.՝ 602 հզ. (2010): Գղտ. շրջանի կենտրոն է:

ՌԻԲԵՆՏՐՈՊ (Ribbentrop) Յոահիմ (1893–1946), Գերմանիայի ԱԳ նախարար՝ 1938–45-ին: Որպես ԵՀՊ-ի գլխ. ռազմ. հանցագործի՝ Նյուրնբերգի ռազմ. տրիբունալը դատապարտել է մահապատժի:

ՌԻԲԵՐԱ (Ribera) Խուսեպե դե (1591–1652), իսպանացի գեղանկարիչ, փորագրող: Նկարներն աչքի են ընկնում խոր մարդկայնությամբ, շեշտված նյութականության և գեղ. ընդհանրացվածության զուգորդմամբ («Կաղլիկը», 1642, «Սուրբ Ինեսա», 1641):

ՌԻԲԿՈ Նիկոլայ Ստեպանովիչ (1911–1977), ռուս օդաչու: ԽՍՀՄ վաստ. փորձարկող օդաչու: ԽՄ հերոս (1957): Փորձարկել է 1-ին հետագնա ռեակտիվ կործանիչները (Տու -16 ևն):

ՌԻԲՈ (Ribot) Թեոդյուլ Արման (1839–1916), ֆրանսիացի հոգեբան և հոգեախտաբան: Ֆրանսիայում առաջին հոգեբ. լաբորատորիայի (1889) տնօրեն, «Ռևյու ֆիլասոֆիկ» հանդեսի հիմնադիր-խմբ.: Ռ. Ֆրանսիայում սկզբնավորել է բարձրագույն հոգեկան գործընթացների փորձարար. հետազոտությունները:

ՌԻԲՈՆՈՒԿԼԵԱԶՆԵՐ, ՌՆԹ-ազներ, ֆերմենտներ, որոնք կատալիզում են *ռիբոնուկլեինաթթուների* ճեղքումը: Պանկրեատիկ Ռ. (եզան ենթաստամոքս. գեղձից) առաջին ֆերմենտն է, որի առաջնային կառուցվածքը, այսինքն՝ այն կազմող ամինաթթվային մնացորդների հաջորդականությունը լրիվ որոշված է:

ՌԻԲՈՆՈՒԿԼԵԻՆԱԹԹՈՒՆՆԵՐ (ՌՆԹ), բարձրմոլ. օրգ. միացություններ. կազմված են նուկլեաղիտներից (ադենին, գուանին, ցիտոզին և ուրացիլ) և ռիբոզ շաքարից (ԴՆԹ-ում ուրացիլի փոխարեն՝ թիմին, ռիբոզի փոխարեն՝ դեզօքսիռիբոզ): Բոլոր կենդանի օրգանիզմներում մասնակցում են գենետիկ. տեղեկույթի իրականացմանը: Լինում են 3 հիմն. տիպերի՝ մատրիցային կամ տեղեկատվ. (մ-ՌՆԹ կամ տ-ՌՆԹ), փոխադր. (փ-ՌՆԹ), ռիբոսոմ. (ռ-ՌՆԹ): Բազմաթիվ վիրուսներում (այսպես կոչված՝ ՌՆԹ-պարունակող) ժառանգականության նյութն են: Որոշ ՌՆԹ-ներ ունեն ֆերմենտային ակտիվություն:

ՌԻԲՈՍՈՄՆԵՐ, ներբջջ. մասնիկներ, որոնք կազմված են ռիբոսոմ. ՌՆԹ-ից և սպիտակուցներից: Կապվելով մ ՌՆԹ-ի մոլ-ի հետ՝ իրականացնում է նրա տրանսլյացիան (սպիտակուցի կենսասինթեզը): Մ ՌՆԹ-ի 1 մոլ-ով կարող են կապվել մի քանի Ռ.՝ առաջացնելով պոլիռիբոսոմներ (պոլիսոմներ): Ռ. կան բոլոր կենդանի օրգանիզմներում:

ՌԻԳԱ (Riga), Լատվիայի մայրաքաղաքը՝ Դաուգավա գետի և Բալթիկ ծովի Ռիգայի ծոցի ափին: Բն.՝ 706 հզ. (2010): Երկթղ. կայարան և ծով. նավնգստ է: Գործում են բազմաթիվ բուհեր, թանգարաններ (այդ թվում՝ Լատվիայի պատմության, քաղաքի և ծովագնացության, գեղարվ-ի ևն), թատրոններ (Լատվիայի Ազգ. օպերայի) ևն: Հայտնի է 1198-ից:

ՌԻԳԱՅԻ ԾՈՑ, Բալթիկ ծովում՝ Էստոնիայի և Լատվիայի ափերին: Ծովից բաժանված է Մոնզունդյան կղզեխմբով: Երկ.՝ 174 *կմ*, խոր.՝ մինչև 67 *մ*: Ռ. ծ. թափվում են Դաուգավա, Լիելուպե, Գաույա գետերը: Սառչում է դեկտ–ապրիլ-ին: Գլխ. նավնգստ-ը՝ *Ռիգա*:

ՌԻԳԱՅԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, 1. **1920**, ՌԽՖՍՀ-ի և Լատվիայի միջև, որով Խորհրդ. Ռուսաստանը ճանաչել է Լատվիայի անկախությունը: Ճշտել է խորհրդա-լատվ. սահմանը, հիմք դրել դիվանագիտ. հարաբերությունների: 2. **Խորհրդա-լեհական 1921**, ՌԽՖՍՀ-ի (նաև ԲԽՍՀ-ի և Ուկր. ԽՍՀ-ի անունից) և Լեհաստանի միջև: Վերջ է դրել 1920-ի խորհրդա-լեհ. պատերազմին, ճշտել մի կողմից՝ ԲԽՍՀ-ի և Ուկր. ԽՍՀ-ի, մյուս կողմից՝ խորհրդա-լեհ. սահմանները (Լեհաստանին են անցել Արմ. Ուկրաինան և Արմ. Բելառուսը), հիմք դրել դիվանագիտ. և առևտր. հարաբերությունների:

ՌԻԳԵԼ β- **Օրիոնի**, երկնասպիտակավուն աստղ (տեսանելի կրկնակի) գրոյական *ա.մ*-յան, արեգակնայինից 23 հզ. անգամ ավելի լուսատվությամբ:

ՌԻԳԵԼՄԱՆ Ալեքսանդր Իվանովիչ (1720–1789), ռուս. ռազմ. ճարտարագետ, գեներալմայոր (1771), պատմաբան: Ռուս-թուրք. պատերազմների (1735–39 և 1768–74) մասնակից: Հեղինակ է «Տարեգրություն Փոքր Ռուսիայի. նրա ժողովուրդների և ընդհանրապես կազակների մասին» (հրտ.՝ 1847) աշխ-յան:

ՌԻԳԵՐ (Rieger) Ֆրանտիշեկ Լադիսլավ (1818–1903), չեխ քաղ. գործիչ: 1874-ից՝ հին չեխերի կուս-յան առաջնորդներից: Իրավագիտ-յան դ-ր: Չեխ. 1-ին հանրագիտարանի (հ. 1–11, 1858–74) նախաձեռնողներից և խմբ-ներից:

ՌԻԳԵՐՏ Դավիդ Ադամովիչ (ծ. 1947), ռուս. ծանրամարտիկ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1971), ՌԴ վ. մ. (2004): Օլիմպ. (1976), աշխարհի 6-ակի (1971–78), Եվրոպայի 9-ակի (1971–80), ԽՍՀՄ 5-ակի (1972–78) չեմպիոն: Սահմանել է աշխարհի 63 ռեկորդ: 2004-ի օլիմպ. խաղերում՝ ՌԴ հավաքականի մարզիչ:

ՌԻԳԻ-ԼԵԳՅՈՒԿԻ ԷՖԵԿՏ, ջերմամագնիսական էֆեկտ, ջերմաստիճան. տարբերությամբ հաղորդիչներում լրացուցիչ ջերմաստիճան. գրադիենտի առաջացումը մագնիս. դաշտի ազդեցությամբ: Հայտնաբերել են իտալացի ֆիզիկոս Ա. Ռիգին (1850–1920) և ֆրանսիացի ֆիզիկոս Ս. Լեդյուգը (1853–1939) 1887-ին:

«ՌԻԳՎԵԴԱ» («Հիմների գիրք»), առավելապես կրոն. հիմների ժող.: Հնդ. գրկ-յան առաջին հայտնի հուշարձանն է, վեդա-ներից ամենահինն ու ամենանշանակալին: Բաղկացած է 10 գրքից կամ շարքից (մանդալա), պարունակում է 1028 հիմն: «Ռ.» վերջնականապես ձևավորվել է մ. թ. ա. X դ-ում:

ՌԻԴ (Reid) Թոմաս Մայն (1818–1883), անգլիացի գրող: Հեղինակ է «Ազատ հրաձիգներ» (հ. 1–2, 1850), «Սպիտակ առաջնորդը» (հ. 1–3, 1855), «Բվարտերոնուհին» (հ. 1–3, 1856), «Սեմինոլների առաջնորդ՝ Օցեոլան» (1858), «Հարավային Աֆրիկայի խորքերում կամ Բուրի և նրա ընտանիքի արկածները» (1856), «Ընձուղտորսներ» (հ. 1–3, 1867), «Մահացու կրակոց» (հ. 1–3, 1873) արկած., «Անգլուխ ձիավորը» (հ. 1–2, 1866, հայ.՝ 1958) արկած-դետեկտիվ վեպերի: Հայ. հրատարակվել են նաև «Երկեր» (հ. 1–5, 1971–77), «Անտառի զավակները» (1913) պատմվածքների ժող-ներ:

ՌԻԴ (Reed) Ջոն (1887–1920), ամերիկացի գրող, լրագրող: ԱՄՆ կոմկուսի հիմնադիրներից (1919): ԱՀՊ-ի տարիներին Եվրոպայում զինվ. թղթ.: Հոկտ. հեղ-յան մասնակից, որի իրադարձությունները պատկերել է «10 օր, որ ցնցեց աշխարհը» (1919, հայ.՝ 1925) գրքում:

ՌԻԴ Ուոլթեր (1851–1902), ամերիկացի բժիշկ և բակտերիաբան: Աշխ-ները վերաբերում են դեղին տենդին (Կ. Խ. Ֆինլեյից անկախ հայտնագործել է այդ հիվանդության հարուցիչը):

ՌԻԴԲԵՐԳ (Rydberg) Յոհաննես Ռոբերտ (1854–1919), շվեդ ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են ատոմ. սպեկտրների համակարգմանը. առաջարկել է սպեկտր. գծի ալիքի երկ-յան որոշման բանաձև: Ներմուծել է (1890) իր անունով հայտնի հաստատուն (R), ֆիզ. հաստատուն, մտնում է ատոմների սպեկտր. գծերի համար ստացված բանաձևերի մեջ.

$$R = R\infty/(1 + m/M),$$ որտեղ

$R\infty = 2\pi^2 me^2/ch^3 = 1,097373 \times 10^7$ մ$^{-1}$, M-ը՝ միջուկի զանգվածը, m-ն և e-ն՝ էլեկտրոնի զանգվածը և լիցքը, c-ն՝ լույսի արագությունը, h-ը՝ Պլանկի հաստատունը: Ռ-ի պատվին **Ռիդբերգ** են կոչվել էներգիայի արտահամակարգ. միավոր՝ R_y, $R_y = 13,60$ *Էվ*, որը ջրածնի ատոմի հիմն. վիճակից իոնացման էներգիան է:

$1R_y = 2,1796 \cdot 10^{-11}$ *էրգ*:

ՌԻԵԳՈ Ի ՆՈՒՆԵՍ (Riego y Núñez) Ռաֆայել (1785–1823), իսպանացի հեղ. գործիչ: 1820-ի հունվ. 1-ին Ռ. ի Ն-ի ղեկավարած գումարտակի ապստամբությամբ սկսվել է իսպ. հեղ-յունը: 1823-ի ապրիլին սկսված ֆրանս. ինտերվենցիայի ժամանակ Ռ. ի Ն-ի ջոկատները ջախջախվել են: Ռ. ի Ն-ին մահապատժի են ենթարկել:

ՌԻԵԿԱ (Rijeka), ք. Խորվաթիայում, խոշոր նավնգստ Ադրիատիկ ծովի Ռիեկա ծոցի ափին: Բն.՝ 138 հզ. (2010):

ՌԻԵԿԱՅԻ ԾՈՑ, Ադրիատիկ ծովի հս-ում՝ Իստրիա թ-կղզու և Կրկ ու Ցրես կղզիների միջև: Երկ.՝ 28 *կմ*, լայն.՝ 22 *կմ*, խոր.՝ 40–50 *մ*: Նվինգստ-ը՝ *Ռիեկա*:

ՌԻԶԱԵՎ Սաբիր Ալեքսեի (1924–1978), ադրբեջանցի թատերագետ, կինոգետ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1975): Հեղինակ է «Հրաչյա Ղափլանյան» (1969), «Վարդան Ամեմյան» (1972), «Թատրոն» (1976), «Ռեժիսուրան հայկական թատրոնում» (ռուս., 1968), «Հրաչյա Ներսիսյան» (ռուս., 1968) գրքերի:

ՌԻԶՈՊՆԵՐ (< հուն. rhiza – արմատ և eidos – նման), մամուռների, պտերանմանների, որոշ ջրիմուռների և սնկերի թելանման գոյացություններ, որոնք կատարում են արմատների (քարաքոսերինը՝ միայն ամրացնող) գործառույթ:

ՌԻԶՈԿՏՈՆԻՈԶ, բույսերի հիվանդություն. հարուցիչները հող. սնկերն են: Վնասատու են կարտոֆիլի (սև քոս), ճակնդեղի և որոշ այլ մշակաբույսերի Ռ-ները: Արմատների և ցողունի մերձարմատ. մասում նկատվում են մուգ կապարագույն բծեր՝ սև կետերով:

ՌԻԶՈՍՖԵՐԱ (< հուն. rhiza – արմատ և *սֆերա*), բույսի մերձարմատ., մանրէների բարձր պարունակությամբ հողաշերտը (2–3 *մմ*): Մանրէները բույսերի համար դժվարամարսելի միացությունները փոխարկում են դյուրամարսելիների՝ համակեցության մեջ մտնելով բույսերի հետ (պալարաբակտերիաներ, միկոռիզ):

ՌԻԹՄ (հուն.՝ rhythmos – համաչափություն, բարեկազմություն), 1. ժամանակի մեջ հավասար և համանման միավորների պարբեր., համաչափ կրկնություն: 2. Հնչյունային կարճ կամ երկար, անհավասար կամ հավասար տևողությունների կազմակերպված հաջորդականություն: Հնչյունների տևողությունների հարաբերությունները կազմակերպվում են միասն. հարաբեր. չափման հիման վրա (տես *Մետր*), նրանց բազմակերպ բաժանումների միջոցով (տես *Տևողություն*): Ռ-ի պարզագույն տարրերը հարաբերվում են նաև իրենց մետր. ֆունկցիայով (տես *Շեշտ*): Տարբերում են Ռ-ի պարզ և բարդ տեսակներ, որոնց մի մասն ունի բնորոշ պայման. (կետագծային, լոմբարդյան, ևն) անվանումներ: 3. (Գրկ.) Ռ. չափածո խոսքի հիմն. հատկանիշն է, ստեղծվում է ռիթմ. միավորների շեշտված և անշեշտ վանկերի, միանման ոտքերի կամ անդամների, նույնաչափ տողերի, նույնաքանակ տների կամ հատվածների կրկնությամբ: Հին շրջանի հայ բանաստեղծությունը, շարականների մեծ մասը, ինչպես և Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը, հետագայում նաև Սիամանթոյի և ուր. որոշ ստեղծագործություններ գրվել են ազատ ոտանավորներին հատուկ՝ անկանոն Ռ-ով:

ՌԻԹՄԻԿ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ, ֆիզ. վարժությունների (քայլք, վազք, թռիչքներ ևն) համալիր, որոնք կատարվում են երաժշտության ուղեկցությամբ: Օգտագործվում է առողջարար. նպատակով, կոչվում է նաև աերոբիկա:

ՌԻԹՄԻԿԱ, 1. ուսմունք բանաստեղծ. կամ երաժշտ. *ռիթմի* մասին (տես *Տաղաչափություն*): 2. Որևէ ժողդ-ի լեզվի, բանաստեղծի կամ կոմպոզիտորի երկին, բանաստեղծ. կամ երաժշտ. որևէ ժանրին, ոճին բնորոշ ռիթմ. ընդհ. հատկանիշների ամբողջությունը (հայ ժող. երաժշտության Ռ. ևն): 3. Ֆիզ. պլաստիկ վարժությների համակարգ (սովորաբար՝ երաժշտության ուղեկցությամբ): Հիմնադիր՝ Է. *Ժակ-Դալկրոզ* (1913):

ՌԻԺԿՈՎ, Նիկոլայ Իվանովիչ (ծ. 1929), ռուս պետ. և քաղ. գործիչ: Հայաստանի Ազգ. հերոս (2008): 1975–79-ին՝ ԽՍՀՄ ծանր և տրանսպորտ. մեքենաշինության նախարարի, 1979–82-ին՝ ԽՍՀՄ պետպլանի նախագահի 1-ին տեղակալ, 1982–85-ին՝ ԽՄԿԿ ԿԿ քարտուղար, 1985–90-ին՝ ԽՍՀՄ ՆԽ նախագահ: 1998-ին Սպիտակ ք-ում կանգնեցվել է Ռ-ի արձանը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1969, 1979), ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» շքանշան (2014):

ՌԻԺՈՎ, Յուրի Ալեքսեևիչ (ծ. 1930), ռուս մեխանիկոս, քաղ. գործիչ: ՌԳԱ ակադ. (1987), 1994-ից՝ Միջազգ. ճարտարագիտ. համալսարանի նախագահ: 1986–92-ին՝ Մոսկվայի ավիացիոն ինստ-ի ռեկտոր: Աշխ-ները վերաբերում են բարձր արագությունների աերոդինամիկային:

ԽՍՀՄ Պետ. (1983), ՌԴ նախագահի (2000) մրց-ներ:

ՌԻԺՈՎ, Նիկոլայ Իվանովիչ (1900–1986), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1971): 1923-ից՝ Փոքր թատրոնի դերասան (Պլատոն, Լինյան՝ Ա. Ն. Օստրովսկու «Ճշմարտությունը լավ է, իսկ երջանկությունն ավելի լավ», «Գայլեր և ոչխարներ», Սեմյոնով-Պիշչիկ՝ Ա. Պ. Չեխովի «Բալենու այգին», ևն):

ՌԻԼԱՅԻ ՄԵՆԱՍՏԱՆ, X դ-ի ճարտ. համալիր Բուլղարիայում՝ Ռիլա լ-զանգվածում: Միջնադարում եղել է բուլղ. մշակույթի և լուսավորության կենտրոն: Վերականգնվել է 1833–34-ին: Ռ. մ-ի թանգարանում պահվում է բուլղ. դեկորատիվ-կիրառ. արվ-ի հավաքածուն: Ներառված է Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում:

ՌԻԼԵԵՎ, Կոնդրատի Ֆեոդորովիչ (1795–1826), ռուս բանաստեղծ, դեկաբրիստ: Դեկաբրիստների ապստամբության (1825-ի դեկտ. 14) ղեկ-ներից: Կազմել և հրատարակել է (Ա. Ա. Բեստուժև-Մառլինսկու հետ) «Պոլյարնայա զվեզդա» (ռուս., 1823–25) ալմանախը: Հեղինակ է «Խոհեր» (1825) պատմ. երգերի շարքի, «Վոյնարովսկի» և «Նալիվայկո» (անավարտ, երկուսն էլ՝ 1825) պոեմների, նաև «Քաղաքացի» և այլ բանաստեղծությունների: Ենթարկվել է մահապատժի:

ՌԻԼԵՆԿՈՎ, Նիկոլայ Իվանովիչ (1909–1969), ռուս բանաստեղծ: Հեղինակ է հայրենիքին, Ռուսաստանի բնությանը նվիրված «Կեչիների միջանտառակը» (1940), «Արմատներ և տերևներ» (1960), «Ձյունաջրի լճակ» (1968) բանաստեղծությունների ժող-ների, նաև պոեմների, վիպակների, պատմվածքների:

ՌԻԼԻԶԻՆԳ-ՀՈՐՄՈՆՆԵՐ (անգլ.՝ release – ազատել), մարդու և կենդանիների նյարդահորմոններ, որոնք արտադրվում են ենթատեսաթմբում (հիպոթալամուս) և կարգավորում են գոնադոտրոպ, ադրենոկորտիկոտրոպ և այլ հորմոնների առաջացումն ու ներզատումը հիպոֆիզում: Վերջիններս ազդելով ներզատիչ գեղձերի վրա՝ կարգավորում են համապատասխան հորմոնի ներզատումը: Ռ-ի. օրգանիզմում նյարդ. ու հորմոն. համակարգերը կապող օղակներից է:

ՌԻԼԿե (Rilke) Ռայներ Մարիա (1875–1926), ավստրիացի բանաստեղծ: Հեղինակ է «Ժամագիրք» (1905), «Նոր բանաստեղծություններ» (մաս 1–2, 1907–08) ժող-ների, «Դուինյան էլեգիաներ» (1923) շարքի, «Մալտե Լաուրիդս Բրիգեի նոթերը» (1910) վեպի, նաև էսսեների, դրամատիկ. և այլ գործերի: Հայ. հրատարակվել է «Բանաստեղծություններ» (1982) ժող-ը:

ՌԻԼՄԿԻ Մաքսիմ Ֆադեևիչ (1895–1964), ուկրաինացի բանաստեղծ: Ուկր. ԽՍՀ (1943), ԽՍՀՄ (1958) ԳԱ-ների ակադ.: Նրա խմբագրությամբ և առաջաբանով ուկր. հրատարակվել են Ա. Իսահակյանի (1951, 1956) և Ե. Չարենցի (1957) բանաստեղծությունների ժող-ները: 1954-ին Հայաստան այցելությունից հետո գրել է «Հայաստանին», «Սև աստղերը» (հայ.՝ 1965), «Մասիս» բանաստեղծությունները: Հայ. հրատարակվել են նաև «Կամուրջներ» (1973) բանաստեղծությունների ժող-ը, «Հայաստանի և հայ կուլտուրայի մասին» (1973, ընդգրկում է նաև Պ. Տիչինայի գործերից) գիրքը: ԽՍՀՄ Պետ. (1943, 1850), Լենինյան (1950) մրց-ներ:

ՌԻԽԹՀՈՖԵՆ (Richthofen) Վոլֆրամ ֆոն (1895–1945), գերմանացի գեն-ֆլդմ. (1943): ԵՀՊ-ի ժամանակ (1942-ից) եղել է օդ. նավատորմի հրամ.՝ խորհրդա-գերմ. ռազմաճակատում և Իտալիայում:

ՌԻԽԹՀՈՖԵՆ Ֆերդինանդ Պաուլ Վիլհելմ (1833–1905), գերմանացի աշխարհագետ և երկրաբան: Աշխարհագրությունը դիտել է որպես ֆիզ., կենսա- և անտրոպոաշխարհագրությունից բաղկացած գիտ-յունների համակարգ: Գերմ. երկրաձևաբան. դպրոցի հիմնադիրներից է: Առաջարկել է լյոսի առաջացման էոլյան վարկածը:

ՌԻԽՄԱՆ Գեորգ Վիլհելմ (1711–1753), գերմանացի ֆիզիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1741): Ռուսաստանում սկզբնավորել է էլեկտրականության ուսումնասիրությունը: Մ. Վ. *Լոմոնոսովի* հետ կատարել է մթն. էլեկտրականության չափումներ: Զոհվել է կայծակի հարվածից:

ՌԻԽՏԵՐ Անդրեյ Անդրեևիչ (1911–1950), ռուս. միջատաբան և կենդանաբան (ծագումով՝ գերմանացի): Մշակել է կարծրթաթև միջատների դասակարգման լայն ճանաչման արժանացած և ցայսօր կիրառվող մեթոդ: Ուսումնասիրել է նաև ՀԽՍՀ-ում կարծրթաթև միջատների ֆաունան, ձևաբանությունը և էկոլոգիան: Կազմել է ԽՍՀՄ և հարակից երկրների ոսկեբզեզների ֆաունայի կատալոգը և «ԽՍՀՄ ֆաունա» կապիտալ աշխ-յան «Ոսկեբզեզներ» (Մ. Տեր-Մինասյանի հետ) բաժինը: Ռ-ի խմբագրությամբ ստեղծվել են «Կենդանաբանական ժողովածուն» (ռուս.) և «Հայաստանի միջատների որոշիչներ» շարքը:

ՌԻԽՏԵՐ (Righter) Բերտոն (ծ. 1931), ամերիկացի ֆիզիկոս: Հայտնաբերել է (1974, Ս. *Տինգից* անկախ) J/ψ մեզոնները:

Նոբելյան մրց. (1976, Ս. Տինգի հետ):

ՌԻԽՏԵՐ (Richter) Հանս Վեռներ (1908–1993), գերմանացի գրող: Հեղինակ է «Պարտվածները» (1949), «Մի՛ սպանաներ» (1955, հայ.՝ 1972) հակապատերազմ. և հակաֆաշիստ., «Լինուս Ֆլեկ...» (1959) սոցիալ. թեմաներով սատիր. վեպերի, «Փախուստ Արանոն» (1980) հոգեբ. վիպակի, նաև հրապարակախոս. նյութերի:

ՌԻԽՏԵՐ Սվյատոսլավ Տեոֆիլովիչ (1915–1997), ռուս. դաշնակահար (ծագումով՝ գերմանացի): ԽՍՀՄ ժող. արտիստ (1961): Սոց. աշխ. հերոս (1975): 1933–37-ին՝ Օդեսայի ՕՖԹ-ի կոնցերտմայստեր: Հանդես է եկել նաև հայկ. նվագախմբի հետ (Կոմիտասի անվ. քառյակի ևն):

Երաժիշտ կատարողների համամիութ. III մրցույթի 1-ին (1945, Մոսկվա), ԽՍՀՄ (1950) և ՌԴ (1995) Պետ., «Գրեմմի» (1960), Լենինյան (1961) մրց-ներ:

ՌԻԿԱԼԻՆ Նիկոլայ Նիկոլաևիչ (1903–1985), ռուս. մետաղագետ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1968): Աշխ-ները վերաբերում են մետաղների մշակման և զոդման, մետաղագործության մեջ պլազմային շարժըն-

թացների և անօրգ. նյութերի տեխնոլոգիական: ԽՍՀՄ Պետ. մրց. (1979):

ՌԻԿԱՏԻ (Riccati), իտալացի հայր և որդի մաթեմատիկոսներ: 1. **Յակոպո Ֆրանչեսկո Ռ.** (1676–1754), աշխ-ները վերաբերում են ինտեգրալ. հաշվին և դիֆերենցիալ հավասարումներին: 2. **Վինչենցո Ռ.** (1707–1775), Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1760): Ներմուծել է հիպերբոլային ֆունկցիան:

ՌԻԿԱՐԴՈ (Ricardo) Դեվիդ (1772–1823), անգլիացի տնտեսագետ, դաս. քաղտնտ-յան խոշորագույն ներկայացուցիչներից: Գլխ. աշխ-ը՝ «Քաղաքատնտեսության և հարկման սկզբունքները» (1817): Զարգացնելով Ա. *Սմիթի* գաղափարները՝ Ռ. ապացուցել է, որ ապրանքների արժեքը, որի միակ աղբյուրը բանվորի աշխ-ն է, ընկած է հաս-յան տարբեր դասակարգերի եկամուտների՝ աշխատավարձի, շահույթի, տոկոսի և ռենտայի հիմքում: Դասակարգերի միջև այդ եկամուտների բաշխման օրենքների ուսումնասիրությունը համարել է քաղտնտ-յան գլխ. խնդիրը: Ձևակերպել է աշխատավարձի և կապիտալիստի շահույթի միջև հակադարձ համամասն. կախվածության օրենքը, մշակել բաշխման, հաս. կապիտալի վերարտադր-յան, փողի տեսությունները:

ՌԻԿԵՐՏ (Rickert) Հենրիխ (1863–1936), գերմանացի փիլ., նորկանտականության Բադենյան դպրոցի հիմնադիրներից: Ըստ Ռ-ի՝ փիլ-յունն ուսմունք է արժեքների մասին, բնագիտ-յան մեթոդը հակադրել է պատմ. գիտ-յունների մեթոդին, որը բացահայտում է եզակի, անկրկնելի երևույթները և իրադարձությունները:

ՌԻԿՈՎ Ալեքսանդր Իվանովիչ (1881–1938), ռուս քաղ. գործիչ: 1924–30-ին (1924–29-ին՝ նաև ՌԽՖՍՀ)՝ ԽՍՀՄ ժող-կոմխորհի նախագահ: 1920-ական թթ-ի վերջերին դեմ է եղել նէպի դադարեցմանը: 1931–36-ին՝ Կապի և հեռահաղորդակցության ժողկոմ: Բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ՌԻՄԱՆ (Riemann) Գեորգ Ֆրիդրիխ Բեռնհարդ (1826–1866), գերմանացի մաթեմատիկոս: Սկզբնավորել է անալիտիկ ֆունկցիաների տեսության երկրչփ. ուղղությունը: Աշխ-ները վերաբերում են հանրահաշվ. ֆունկցիաներին, դիֆերենցիալ հավասարումների անալիտիկ տեսությանը, պարբեր. թվերի բաշխմանը, եռանկյունաչափ. շարքերին ու ինտեգրալի տեսությանը: Առաջարկել է տոպոլոգիայի մի շարք հիմնարար գաղափարներ: Երկրչփ-յունը դիտարկել է որպես կամայական միասեռ օբյեկտների անընդհատ համախմբերի տեսություն: Ներմուծել է այսպես կոչված ռիմանյան տարածություններ և զարգացրել նրանց տեսությունը (*Ռիմանի երկրաչափություն*):

ՌԻՄԱՆ Հուգո (1849–1919), երաժշտության գերմանացի տեսաբան և պատմաբան: Երաժշտագիտ-յան խոշոր տես. դպրոցներից մեկի հիմնադիրը: Աշխ-ները վերաբերում են երաժշտության և գեղագիտ-յան տեսությանն ու պատմությանը («Երաժշտական բառարան», 1882, ևն):

ՌԻՄԱՆԻ ԵՐԿԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ, երկրչփ-յան բազմաչափ ընդհանրացումը մակերևույթի (այսպես կոչված, երկչափ տարածության երկրչփ-յան) վրա: Ուսումնասիրում է բազմաչափ տարածությունների երկրչփ-յունը, որոնց փոքր մարզերում գործում է (2-րդ կարգի անվերջ փոքրերի ճշգրտությամբ) Էվկլիդեսի երկրչփ-յունը (ամբողջ տարածքն այդ ընթացքում կարող է չլինել Էվկլիդեսյան): Կոչվել է Գ. *Ռիմանի* անունով, որը 1854-ին դրել է նրա հիմքերը:

ՌԻՄԻՆԻ (Rimini), ք. Իտալիայում՝ Ադրիատիկ ծովի մոտ (միացված է ջրանցքով): Բն.՝ 142 հզ. (2010): Կարևոր տրանսպորտ. հանգույց է, ծով. նվինգստ-ն սպասարկում է Սան Մարինո պետությանը: Կան XIII–XV դդ-ի ճարտ. հուշարձաններ:

ՌԻՄՆԻԿ (Rîmnic), գետ Ռումինիայում, Սիրետի (Սերետ) վտակը: 1787–91-ի ռուս-թուրք. պատերազմի ժամանակ՝ 1789-ի սեպտ. 11-ին, Ռ-ի ռուս. և ավստր. զորքերը Ա. Վ. *Սուվորովի* հրամանատարությամբ ջախջախել են թուրք. բանակին, որի համար Սուվորովն ստացել է Ռ-ի կոմս տիտղոսը:

ՌԻՄՍԿԻ-ԿՈՐՍԱԿՈՎ Նիկոլայ Անդրեևիչ (1844–1908), ռուս. կոմպոզիտոր, դիրիժոր: Ռուս. երաժշտության դասական, կոմպոզիտոր. դպրոցի հիմնադիրը: Հեղինակ է «Մայիսյան գիշեր» (1879), «Ձյունանուշիկը» (1881), «Սադկո» (1896), «Մոցարտ և Սալիերի» (1898), «Թագավորի հարսնացուն» (1898), «Ոսկե աքաղաղ» (1907) օպերաների, սիմֆոնիաների, «Իսպանական կապրիչչոյի» (1887), «Շեհերեզադե» (1888) սիմֆ. սյուիտի, կանտատների, խմբերգերի և այլ գործերի: Մշակել է ժող. երգեր: Գործիքավորել և ավարտել է Մ. Պ. Մուսորգսկու, Ա. Պ. Բորոդինի, Ա. Ս. Դարգոմիժսկու գործերից:

ՌԻՆԱԼԴԻ (Rinaldi) Անտոնիո (մոտ 1710–1794), իտալացի ճարտ.: 1751-ից՝ Ռուսաստանում: Ռոկոկոյի ավանդույթներով Օրանիենբաումի նստավայրում կառուցել է Չին. պալատը (1762–68) և «Սահարլուր» տաղավարը (1762–74): Ս. Պետերբուրգի Մարմարե (1768–85) և Գատչինայի (1766–81) պալատները կառուցել է դաս. ոճով:

ՌԻՆԳ, 1. (տնտ.) հետագայում բարձր գներով վաճառելու և առլգն շահույթ ստանալու նպատակով որոշակի ապրանքներ գնելու և պահեստավորելու վերաբերյալ կարճաժամկետ համաձայնության ձև: 2. Բռնցքամարտի հրապարակ, շրջապատից առանձնացվում է ճոպաններով: Քառակուսի (6 x 6 *մ* չափերով) հարթակ է՝ 75–125 *սմ* բարձր-յամբ՝ ծածկված փափուկ, չսահող փովածքով:

ՌԻՆԻՈՖԻՏՆԵՐ (Rhyniophyta), **պսիլոֆիտներ**, անհետացած բույսերի ամենահին և պարզունակ բաժինը: Հանդիպում է վերին սիլուրի և վերին դևոնի նստվածքներում: Ռ-ին բնորոշ են ցողունների դիխոտոմիկ ճյուղավորումը, սպորանգիումների գագաթային դասավորությունը, հավասարասպորավորությունը: Ունեցել են իսկական արմատներ:

ՌԻՆԿ-ՀՈԿԵՅ (անգլ.՝ rink-hockey), անվաչմուշկներով գնդակով հոկեյ: Առաջացել է XX դ-ում Մեծ Բրիտանիայում, տարածվել Իտալիայում, Պորտուգալիայում, Գերմանիայում և այլուր: Եվրոպայի առաջնություններն անցկացվում են 1926-ից, աշխարհինը՝ 1936-ից:

ՌԻՆՈ (Reno), ք. ԱՄՆ Նևադա նահ-ում: Բն.՝ 221 հզ. (2010): Հանգստի և զվարճանքի կենտրոն է (խաղատներ, խաղ. ավտոմատների արտադր-յուն, ռոդեո ևն):

ՌԻՆՈԴԵՐՄԱ ԴԱՐՎԻՆԻ (Rhinoderma darwinii), անպոչ երկկենցաղ: Երկ.՝ մինչև 3 *սմ*: Դունչը երկարել է, վերածվել սրացած կնճռի: Ապրում է Չիլիի լեռներում: Արուն էգի դրած ձվերը հավաքում է բերանում, ապա կրում դրանք կոկորդապարկում: Շերեփուկները զարգացումն ավարտում են ջրում:

ՌԻՆՈՄԿՈՊԻԱ (< հուն. rhis, սեռ. հոլ.՝ rhinos – քիթ և *ակոպիա*), քթի խոռոչի զննման բժշկ. մեթոդ՝ լույսի խուրձն արտացոլող ճակատային ցոլարձակի և քթի լայնիչների օգնությամբ:

ՌԻՆՈՎԻՐՈՒՍՆԵՐ, ՌՆԹ պարունակող վիրուսների սեռ. առաջացնում են մարդու և կենդանիների վերին շնչառ. ուղիների բորբոք. հիվանդություններ:

ՌԻՆՈՖԻՄԱ (< հուն. rhis, սեռ. հոլ.՝ rhinos – քիթ և phyma – մակաճ), քթի մաշկի քրոնիկ. հիվանդություն. բնորոշվում է քթի մաշկ. տարրերի գերաճմամբ, քթի մեծացմամբ և այլանդակմամբ:

ՌԻՇԱՐ (Richard, Դեֆեյ) Պիեռ (ծ. 1934), ֆրանսիացի դերասան, կինոռեժ.: Ստեղծել է բարի, անհաջողակ, խենթավուն հերոսների կերպարներ [«Սև կոշիկներով բարձրահասակ շիկահերը», «Բարձրահասակ շիկահերի վերադարձը», «Խաղալիք», «Հրապուրանք» (խորհրդ. էկրանին՝ «Հախողակները»), «Փախստականներ», «Պիեռի երջանկությունը» ևն]: 1996-ին նկարահանվել է «Սիրահարված խոհարարի հազար ու մեկ բաղադրատոմսը» վրաց. ֆիլմում: Նկարահանել է «Ցրվածը» (1970), «Ես երկչոտ եմ, սակայն բուժվում եմ» (1978) և այլ կատակերգ. ֆիլմեր:

ՌԻՇԵ (Richet) Շառլ (1850–1935), ֆրանսիացի իմունաբան և ֆիզիոլոգ: Փարիզի ԳԱ անդամ (1914, նախագահ՝ 1933-ից), ԽՍՀՄ (1925), Ս. Պետերբուրգի (1912) ԳԱ-ների արտ. թղթ. անդամ: Առաջինն է (1902) նկարագրել օտարածին սպիտակուցի հանդեպ օրգանիզմի ռեակցիան և այն կոչել *անաֆիլաքսիա*: Ձևակերպել է «պասսիվ իմունիտետ» հասկացությունը: Աշխ-ներ ունի նաև մարսողության ֆիզիոլոգիայի բնագավառում: Նոբելյան մրց. (1913):

ՌԻՇԵԼՅԵ, **Ռիշելիո** (Richelieu), Արման Ժան դյու Պլեսի (1585–1642), ֆրանսիացի պետ. գործիչ, կարդինալ (1622): 1624–42-ին՝ Լյուդովիկոս XIII-ի 1-ին նախարարն ու Ֆրանսիայի փաստական կառավարիչը: Հուգենոտներին զրկել է քաղ. իրավունքներից: Իրականացրել է վարչ., ֆին. և ռազմ. բարենորոգումներ: Ճնշել է ավատ. խռովությունները և ժող. ապստամբությունները: 1635-ին Ֆրանսիային ներքաշել է *Երեսնամյա պատերազմի* (1618–48) մեջ:

ՌԻՇՏԱ, 1. նեմատողների դասի մակաբույծ որդ: Էգի երկ.՝ մինչև 120 *սմ*, արուինը՝ մինչև 4 *սմ*: Հանդիպում է արևադարձներում և մերձարևադարձներում: 2. Տես նաև *Դրակունկուլոզ*:

ՌԻՈ ԳՐԱՆԴԵ (Rio Grande՝ ԱՄՆ-ում), Ռիո Բրավո դել Նորտե (Rio Bravo del Norte՝ Մեքսիկայում), գետ ԱՄՆ-ում և Մեքսիկայում, շուրջ 2000 *կմ* սահմանային է: Երկ.՝ 2870 *կմ*, ավազանը՝ 570 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 160 *մ*^{3}: Թափվում է Մեքսիկ. ծոցը: Գրեթե ամբողջությամբ օգտագործվում է ոռոգման համար: Կան խոշոր ջրամբարներ: Ափին են Ալբուքերկե, Էլ Պասո, Լարեդո (ԱՄՆ), Սյուդադ Խուարես, Նուևո Լարեդո (Մեքսիկա) ք-ները:

ՌԻՈ ԳՐԱՆԴԵ ԴԵ ՍԱՆՏՅԱԳՈ (Rio Grande de Santiago), գետ Մեքսիկայում: Երկ.՝ շուրջ 500 *կմ*, ավազանը՝ 125 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ *380 մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Չապալա լճից և թափվում է Խաղաղ օվկ-ը: Գործում է ջրէկ:

ՌԻՈ ԴԵ ԺԱՆԵՅՐՈ (Rio de Janeiro), 1. ք–վի՝նգստ Բրազիլիայում՝ Ատլանտ. օվկ–ի Գուանաբարա ծովախորշի ափին, համանուն նահանգ–ի վարչ. կենտրոնը: Ունի օդանավակայան: Բն.՝ 6,26 մլն (Մեծ Ռ. դ. ժ. ագլոմերացիայում՝ 12,13 մլն, 2010): Երկ–րի գլխ. ֆինանսաբանկ., առևտր., գիտ. և մշակութ. կենտրոնն է, բազմաթիվ խոշոր միջազգ. և ազգ. կազմ–յունների նստավայրը: Գործում են թանգարաններ (այդ թվում՝ Հնդկացիական, Աշխարհագր.), թատրոններ և բուհեր: Հիմնադրել են պորտուգ. կոնկիստադորները 1565–ին: 1763–1822–ին եղել է Բրազիլիա փոխարքայության, 1822–89–ին՝ Բրազիլիա կայսրության, 1889–1960–ին՝ Բրազիլիայի Դաշն. Հանրապետության մայրաքաղաքը: Քաղաքի կենտրոնում պահպանվել են XVI–XVIII դդ–ի ճարտ. հուշարձաններ: Հայտնի է Ռ. դ. ժ–ի Մարականա մարզադաշտը, որը տեղավորում է մինչև 97 հզ. հանդիսատես: 2. Նահգ՝ Բրազիլիայում: Տարածքը՝ 43,4 հզ. *կմ*^{2}, բն.՝ 16 մլն: Վարչ. կենտրոնը՝ ***Ռիո դե Ժանեյրո***:

ՌԻՈ ԴՈՒԼՍԵ (Rio Dulce), գետ Արգենտինայում: Երկ.՝ 650 *կմ*, ավազանը՝ 90 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 80 *մ*^{3}/*վ*: Հոսում է Անդերով և Գրան Չակո հարթավայրով: Թափվում է Սար Չիկիտա լիճը:

ՌԻՈ ԿՈԼՈՐԱԴՈ (Rio Colorado), գետ Արգենտինայում՝ Պատագոնիայում: Երկ.՝ ավելի քան 1200 *կմ*, ավազանը՝ շուրջ 350 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 140 *մ*^{3}/*վ*: Թափվում է Ատլանտ. օվկ–ը: Նավարկելի է 320 *կմ*:

ՌԻՈ ՆԵԳՐՈ (Rio Negro), գետ Ուրուգվայում, Ուրուգվայի ձախ վտակը: Երկ.՝ 500 *կմ*, ավազանը՝ 70,6 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 700 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է ստորին հոսանքում: Միջին հոսանքում է համանուն խոշոր ջրամբարը: Կա ջրէկ:

ՌԻՈ ՆԵԳՐՈ, գետ Արգենտինայում՝ Պատագոնիայում: Երկ. Նեուկեն գետի հետ՝ 1300 *կմ*, ավազանը՝ 146 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ շուրջ 950 *մ*^{3}/*վ*: Թափվում է Ատլանտ. օվկ–ը: Առանձին հատվածներում նավարկելի է:

ՌԻՈ ՆԵԳՐՈ, պրովինցիա Արգենտինայում: Տարածքը՝ 203 հզ. *կմ*^{2}, բն.՝ 638,6 հզ. (2010): Վարչ. կենտրոնը՝ Վիեդմա:

ՌԻՈԲԱՄԲԱ, (Riobamba), ք. Էկվադորում, Չիմբորասո պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 142 հզ. (2010): Հիմնադրվել է 1534–ին:

ՌԻՈՆ, գետ Վրաստանում: Երկ.՝ 327 *կմ*, ավազանը՝13,4 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 399 *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Մեծ Կովկասի լանջերից, հոսում է Կոլխիդայի ցածրավայրով և Փոթի ք–ի մոտ թափվում է Սև ծովը: Կան ջրէկներ: Հովտի վերին հատվածով անցնում է Ռազմաոս. ճանապարհը:

ՌԻՉԱԳՈՎ, Պավել Վասիլևիչ (1911–1941), խորհրդ. զորահրամ., ավիացիայի գնդապետ. (1940): ԽՄ հերոս (1936): Մասնակցել է 1936–39–ի Իսպանիայի քաղաքաց., Խորհրդա–ֆինն. պատերազմներին, ճապոն. զավթիչների դեմ մարտերին Չինաստանում: 1940–ից՝ բանակի ՌՕՈՒ գլխ. հրամ., 1941–ի փետր–հունիսին՝ ԽՍՀՄ պաշտպ–յան ժողկոմի տեղակալ: Բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ՌԻՉԱՐԴ I (Richard) Առյուծասիրտ (ֆրանս.՝ Cœur de Lion, անգլ.՝ Lion-Hearted, 1157–1199), Անգլիայի թագավոր՝ 1189–ից՝ Պլանտագենետների հարստությունից: 3–րդ խաչակրաց արշավանքի (1189–92) ժամանակ գրավել է Կիպրոսը և Ակրա ամրոցը (Պաղեստինում): Սպանվել է Ֆրանսիայի դեմ պատերազմում:

ՌԻՉԱՐԴ II (1367–1400), Անգլիայի թագավոր՝ 1377–99–ին: Պլանտագենետների հարստության վերջին ներկայացուցիչը: Սկզբնապես կառավարել է ավագների խորհուրդը: Ռ. II–ի միանձնյա իշխանության հաստատումը (1397) խռովություն է առաջացրել, որի հետևանքով նա գահազրկվել է:

ՌԻՉԱՐԴ III (1452–1485), Անգլիայի թագավոր՝ 1483–ից: Յորքերի հարստության վերջին ներկայացուցիչը: ***Էդուարդ IV***–ի եղբայրը: Գահից հեռացնելով մանկահասակ ***Էդուարդ V***–ին՝ զբաղեցրել է նրա տեղը: Պարտվել է Բոսվորտի մոտ տեղի ունեցած ճակատամարտում և սպանվել:

ՌԻՉԱՐԴՍ (Richards) Այվոր Արմսթրոնգ (1893–1979), անգլիացի լեզվաբան: Հեղինակ է ընդհ. լեզվաբ–յանը վերաբերող աշխ–ների (լեզվի նշանային տեսություն, բառիմաստ ևն): Չ. Կ. Օգդենի հետ մշակել է նշանային իրադրությունների տեսությունը, լեզվաբ–յան մեջ ներմուծել «ռեֆերենտ» եզրույթը:

ՌԻՉԱՐԴՍ Դիկինսոն (1895–1973), ամերիկացի վիրաբույժ, սրտի ձողարկման (կաթետերացում) մեթոդի հեղինակներից: Նոբելյան մրց. (1956, Ա. Ֆ. ***Կուրնանի*** և Վ. ***Ֆորսմանի*** հետ):

ՌԻՉԱՐԴՍՈՆ (Richardson) Սեմյուել (1689–1761), անգլիացի գրող: Եվրոպ. ընտանեկան–կենցաղ. թեմաներով վեպ–նամականու սկզբնավորողը: Հեղինակ է «Պամելան կամ Փոխհատուցված առաքինություն» (1740), «Կլարիսա» (հ. 1–7, 1747–48), «Սըր Չառլզ Գրանդիսոնի պատմությունը» (հ. 1–7, 1754) վեպերի:

ՌԻՉԱՐԴՍՈՆ Օուեն Ուիլանս (1879–1959), անգլիացի ֆիզիկոս: Հայտնագործել է ջերմաէլեկտրոն. առաքումը (Էմիսիան, Ռ–ի էֆեկտ) և հաստատել առաքումային (Էմիսիոն) հոսանքի խտության կախումը ջերմաստիճանից (Ռ–ի բանաձև): Նոբելյան մրց. (1928):

ՌԻՉԻԱ, (Riccia), ռիչիազգիների ընտանիքի լյարդամամուռների ցեղ: Ջր. կամ ցամաք. միամյա, միատուն կամ երկտուն բույս է: Հայտնի է 100 (այլ տվյալներով՝ 130) տեսակ, ՀՀ–ում՝ 3: Առավել տարածված է լողացող Ռ.՝ Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի և այլ մարզերի լեռն. գոտիների լճակներում և դրանց ափերին: Աքվարիում. բույս է:

ՌԻՉՄՈՆԴ (Richmond), ք. ԱՄՆ–ում, Վիրջինիա նահգ–ի վարչ. կենտրոնը՝ Ջեյմս գետի ափին: Բն.՝ 198 հզ. (արվարձաններով՝ 1,1 մլն, 2010): Կարևոր առևտրատնտ. կենտրոն է ԱՄՆ–ի հվ–ում: Հիմնադրվել է 1737–ին: ԱՄՆ–ում քաղաքաց. պատերազմի ժամանակ (1861–65) եղել է ստրկատիր. նահգ–ների համադաշնության կենտրոնը:

ՌԻՉՈԼԻ (Riccioli) Ջովաննի Բատիստա (1598–1671), իտալացի աստղագետ: Գլխ. աշխ–ը՝ «Նոր Ալմագեստ» (1622), ժամանակի աստղագիտ. գիտելիքների ժող. է: Ֆ. ***Գրիմալդիի*** հետ կազմել է Լուսնի քարտեզը և սկսել լուսն. խառնարանների գիտնականների անուններով կոչելու պրակտիկան:

ՌԻՋՈՒԵՅ (Ridgway) Մեթյու Բանկեր (1895–1993), ԱՄՆ բանակի գեն. (1951): ԵՀՊ–ի ժամանակ՝ օդադեսանտ. դիվիզիայի և կորպուսի հրամ.: 1952–53–ին՝ Եվրոպայում տեղակայված ՆԱՏՕ–ի ՋՈՒ գլխ. հրամ., 1953–55–ին՝ ԱՄՆ բանակի շտաբի պետ:

ՌԻՍ (Rees) Մարտին Ջոն (ծ. 1942), անգլիացի աստղաֆիզիկոս: Լոնդոնի թագավոր. ընկ–յան նախագահ (2005–ից): Աշխ–նեը վերաբերում են տիեզերագիտ–յանը, մնացորդ. ճառագայթման և քվազարների հետազոտությանը:

ՌԻՍ (Riesz) Ֆրիդյեշ (1880–1956), հունգար մաթեմատիկոս: Տոպոլոգ. տարածությունների տեսության հիմնադիրներից: Աշխ–ները վերաբերում են ֆունկցիաների տեսությանը, ֆունկցիոնալ անալիզին:

ՌԻՍԱԼ, Ռիսալ ի Ալոնսո (Rizal y Alonso), Խոսե (1861–1896), ֆիլիպինցի լուսավորիչ: Ֆիլիպինների Ազգ. հերոս: Հայտնի էր որպես ազգագրագետ, լեզվաբան, պատմաբան, բժիշկ, քանդ., գեղանկարիչ: Հեղինակ է «Ձդիպչես ինձ» (1887) և «Ծովահեններ» (1891) հակագաղութատիր. վեպերի: 1892–ին հիմնադրել է երկրի 1–ին քաղ. կազմ–յունը՝ Ֆիլիպինյան լիգան: Իսպ. իշխանությունները Ռ–ին մեղադրել են խռովություն հրահրելու մեջ և մահապատժի ենթարկել:

ՌԻՍԵՐ–ԼԱՐՍԵՆ (Riiser-Larsen) Յալմար (1890–1965), նորվեգացի բևեռախույզ, ռազմ. օդաչու, գեն.: Մասնակցել է «Նորվեգիա» դիրիժաբլով դեպի Հս. բևեռ կատարված 1–ին թռիչքին (1926): 1929–31–ին «Նորվեգիա» նավով Անտարկտիդայի շուրջ ղեկավարել է 2 արշավ՝ հայտնագործելով նրա ափի մի մասը (այդ թվում՝ Ռանհիլ արքայադստեր ափը):

ՌԻՍԵՐ–ԼԱՐՍԵՆԻ ԾՈՎ (Riiser-Larsen Sea), Հնդ. օվկ–ի ծայրամաս. ծով Անտարկտիդայի ափին: Մակերեսը՝ 1138,3 հզ. *կմ*^{2}, խոր.՝ ավելի քան 3000 *մ*: Գրեթե ամբողջ տարին ծածկված է լողացող սառույցներով: Ծովի մասին առաջին տեղեկությունը տվել է Ֆ. Բելլինսգհաուզենի ռուս. արշավախումբը (1819–21): Որպես ինքնուրույն ծով այն առանձնացրել է խորհրդ. անտարկտիկ. արշավախումբը 1962–ին: Անվանվել է ի պատիվ Յ. ***Ռիսեր–Լարսենի***:

ՌԻՍԻ ՍԱՆ–ՅԱՊԱՆՈՒՄ (< գերմ. Riß – Ռիս, Դանուբի վտակներից մեկի անվանումը), միջին պլեյստոցենի ժամանակաշրջանում (շուրջ 110–230 հզ. տարի առաջ) Ալպերի՝ չափերով ամենամեծ սառցապատումը. հասել է մինչև նախալեռներ: Համապատասխանում է Հս. Եվրոպայի զավյան, Ալբևելավրոպ. հարթավայրի դնեպրյան (Ռիս I) և մոսկովյան (Ռիս II) սառցապատմանը:

ՌԻՄԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ, բարձր ռիսկ. նախագծերում ներդրվող և միջին ճյուղայինից բարձր շահույթի ստացում ենթադրող կապիտալ, երկրի սոցիալ–տնտ. զարգացման արագացումն ապահովող բարձր տեխնոլոգ., գիտատար, նորարար. նախագծերի ֆինանսավորման հիմն. աղբյուրը: Տրամադրում է ռիսկ. ընկ–ը (հիմնադրամը)՝ փոխառու ձեռն–յան բաժնետոմսերի զգալի մասի դիմաց:

ՌԻՄԿՈՎ, Ալեքսեյ Պետրովիչ (ծ. 1941), ռուս. գենետիկ: ՌԳԱ թղթ. անդամ (1994): Աշխ–ները վերաբերում են կաթնասունների գենոմի շարժուն գենետիկ. տարրերին, գենոմի կառուցվածքաֆունկցիոնալ կազմակերպման, գենետիկ. մատնադիտման հարցերին:

ԽՍՀՄ (1983), ՌԴ Պետ. (1996) մրց–ներ:

ՌԻՄՄԵՆ (Riesman) Դեյվիդ (1909–2002), ամերիկացի սոցիոլոգ, իրավաբան: Անհա-

տի («ներսից կողմնորոշված») տիպային փոփոխությունը նկարագրում է որպես ազատ ձեռներեցության դարաշրջանի ակտիվ սուբյեկտից անցում «արտաքուստ կողմնորոշված» բյուրոկրատ. կազմ-յանը ծառայող անհատին: Քննադատել է բյուրոկրատիան և ռազմամոլությունը:

ՌԻՍՈՐՋԻՄԵՆՏՈ (իտալ.՝ Risorgimento – բառացի՝ վերածնունդ), իտալացի ժողդ-ի ազգ-ազատագր. շարժումն ավստր. լծի դեմ՝ հանուն Իտալիայի միավորման և միասն. ազգ. պետության ստեղծման: Ռ. սկսվել է XVIII դ-ի վերջից («Ռ.» նշանակում է նաև ժամանակաշրջան) և վերջնականապես ավարտվել 1870-ին, երբ Հռոմը միացել է Իտալիայի թագավորությանը: Ռ. առավել վերելքի պահերին վերածվել է հեղ-յան: Ռ. գլխավորելու համար պայքարել են դեմոկրատ հանրապետականները (առաջնորդներն էին Ջ. *Մադինին*, Ջ. *Գարիբալդին* և ուր.): Իտալիայում 2-րդ Ռ. անվանում են իտալացի ժողդ-ի հակաֆաշիստ. ազատագր. պայքարը (1943–45) ԵՀՊ-ի տարիներին:

ՌԻՍՏԻԿԻՎԻ (Ristikivi) Կաղլ (1912–1977), էստոնացի գրող: 1943-ից՝ վտարանդի, 1944-ից՝ Շվեդիայում: Հեղինակ է «Կրակ և երկաթ» (1938), «Օտարի տանը» (1940), «Մրգատու այգի» (1942) եռերգության, «Վերջին քաղաքը» (1962), «Երկակի խաղ» (1972), «Հռոմեական օրագիր» (1976) վիպաշարի, «Մարդու ուղին» (1972) քնար. գործերի ժող-ի:

ՌԻՍՏԻՉ Յովան (1831–1899), Սերբիայի վարչապետ՝ 1873, 1878–80 և 1897-ին: 1868–72 և 1889–93-ին եղել է *ռեգենտ*: Հեղինակ է XIX դ-ի դիվանագիտ. պատմությանը վերաբերող աշխ-ների:

ՌԻՎԱԴԱՎԻԱ (Rivadavia) Բեռնարդինո (1780–1845), Արգենտինայի նախագահ՝ 1826–27-ին: Հվ. Ամերիկայի անկախության պայքարի ղեկ-ներից:

ՌԻՎԵ (Rivet) Պոլ (1876–1958), ֆրանսիացի ազգագրագետ, մարդաբան, լեզվաբան: 1928-ից՝ Փարիզի Մարդու թանգարանի տնօրեն: 1940-ից հարել է Դիմադրության շարժմանը: 1941-ին տարագրվել է Հվ. Ամերիկա, ուսումնասիրել է Ամերիկայի հնդկացիներին: 1944-ին վերադարձել Ֆրանսիա:

ՌԻՎԵՐԱ (Rivera) Դիեգո (1886–1957), մեքսիկացի գեղանկարիչ, գրաֆիկ: Մեքսիկ. մոնումենտալ գեղանկարչության հիմնադիրներից: Մեծածավալ որմնանկարների շարքում (Մեխիկոյի լուսավորության նախ-յունում, 1923–29, Ազգ. պալատում, 1929–50-ական թթ.) քաղ. կամ փիլ. գաղափարներն անձնավորված են դիմանկար. կամ խորհրդանշ. պատկերների միջոցով:

ՌԻՎԵՐՍԱՅԴ (Riverside), ք. ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահց-ում՝ Լոս Անջելեսի մոտ: Բն.՝ 302,6 հզ. (2010): Ռ-Սան Բեռնադինո-Օնտարիո ագլոմերացիայի (բն.՝ 4 մլն) գլխ. կենտրոնը: Հոլիվուդյան կինոնկարահանումների նախընտրելի վայր է: Գործում է Կալիֆոռնիայի (Բերկլի) համալսարանի բաժանմունքը:

ՌԻՎՈԼԱ (Rivola) Ֆրանչիսկոս, XVI դ-ի վերջ–XVII դ-ի 1-ին կեսի իտալացի կանոնիկոս, լեզվաբան-հայագետ: Հեղինակ է հայ. առաջին տպագիր բառարանի՝ «Բառագիրք հայոցի» (1621, շուրջ 11 հզ. բառ), նաև իր տեսակով առաջին «Քերականութիւն հայերէնի» (գիրք 1–4, լատ.,1624) երկի, որտեղ քննել է հայկ. տառերը՝ ըստ ձևի, արժեքի և անվան, հայ-ի ուղղագրությունը, անվան և դերանվան քերական. կարգերը, շարահյուսությունը ևն:

ՌԻՏԵՐ (Ritter) Կառլ (1779–1859), գերմանացի աշխարհագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1835): Հեղինակ է 19 հատոր աշխ-ների՝ նվիրված Ասիայի և Աֆրիկայի երկրներին: Զարգացրել է համեմատ. աշխարհագրության մեթոդը: Հաս. երևույթները բացատրելիս հետևել է աշխարհագր. դետերմինիզմին: Ռ. փորձել է ապացուցել բնության որոշիչ ազդեցությունը ժողդ-ների ճակատագրի վրա: Ռ-ի գաղափարներն զգալիորեն կողմնորոշել են աշխարհագր. մտքի զարգացումը XIX դ-ում և XX դ-ի սկզբին:

ՌԻՏՇԵՆԻ Յուրի Սերգեևիչ (1930–2008), չուկչի գրող: Գրել է նաև ռուս.: Հեղինակ է «Ընհալի ժամանակը» (1958–67) եռերգության, «Հարպուն նետող կինը» (1971), «Հավերժական սառցակալման վերջը» (1977), «Սպիտակ ձյուներ» (1975), «Կախարդական թվեր» (1985), «Տխրության համաստեղության ներքո» (2007) և այլ վեպերի, նաև կինոսցենարների: ՌԽՖՍՀ Պետ. մրց. (1977):

ՌԻՏՈՎ Սերգեյ Միխայլովիչ (1908–1996), ռուս. ֆիզիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1968): Էլեկտրադինամիկայում ջերմ. ֆլուկտուացիայի տեսության հիմնադիրներից: ԽՍՀՄ Պետ. մրց. (1990):

ՌԻՐՈՖԼԱՎԻՆ, լակտոֆլավին, B_{12} վիտամին, ջրալույծ վիտամին: Մի շարք օքսիդավերականգնման ֆերմենտների կազմում մասնակցում է էլեկտրոնների փոխանցման ռեակցիաների, ամինաթթուների և այլ միացությունների փոխարկումներին: Սինթեզում են միկրոօրգանիզմները ու բույսերը: Պարունակվում է կաթնա- և մսամթերքում, բանջարեղենի աղցաններում, ձվի դեղնուցում, գարեջրի խմորիչներում: Ռ-ի անբավարարությունն օրգանիզմում հանգեցնում է մաշկի վնասումների, տեսողության խախտման, քրոնիկ. գաստրիտների և ծակոցների:

ՌԻՑԱ, Ռիցա Մեծ, լիճ Աբխազիայում՝ 950 *մ* բարձր-յան վրա: Մակերեսը՝ 1,49 *կմ*^{2}, խոր.՝ մինչև 116 *մ*: Ներառված է համանուն արգելոցի մեջ: Մայրուղով կապված է Սև ծովի ափի առողջարանների հետ:

ՌԻՑԻՆՈԼԵՅՆԵՐ, սարդակերպների դասի հոդվածոտանիների կարգ: Երկ.՝ 5–10 *սմ*: Հայտնի է մոտ 20 տեսակ՝ Արմ. Աֆրիկայում և Հվ. Ամերիկայում:

ՌԻՑՈՍ (Ritsos) Յանիս (1909–1990), հույն բանաստեղծ: Դիմադրության շարժման մասնակից: Հեղինակ է «Երգ նվիրված քրոջս» (1937), «Գարնանային սիմֆոնիա» (1938), «Հունաստան» (1947) և այլ քնար. պոեմների, «Արթնություն» (1954), «Վկայություններ» (1963–66), «Հեռավոր» (1977) ժող-ների, «Էսսե» (1974) գրքի: Լենինյան միջազգ. մրց. (1977):

ՌԻՈՒ ԲՐԱՆԿՈՒ (Rio Branco), գետ Բրազիլիայում, Ռիու Նեգրուի ձախ վտակը (Ամազոնի ավազան): Երկ.՝ 1300 *կմ*, ավազանը՝ 195 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 5400 *մ*^{3}/*վ*: Ամռանը նավարկելի է մինչև Բոա Վիստա ք.:

ՌԻՈՒ ԳՐԱՆԴԻ (Rio Grande), ք-նվիճգստ Բրազիլիայի Ռիու Գրանդի դու Սուլ նահց-ում: Բն.՝ 198 հզ. (2011):

ՌԻՈՒ ԳՐԱՆԴԻ ԴՈՒ ՆՈՐՏԻ (Rio Grande do Norte), նահց Բրազիլիայի հս-արլ-ում: Տարածքը՝ 53 հզ. *կմ*^{2}, բն.՝ 3,16 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ *Նատալ*:

ՌԻՈՒ ԳՐԱՆԴԻ ԴՈՒ ՍՈՒԼ (Rio Grande do Sul), նահց Բրազիլիայի հվ-ում: Տարածքը՝ 280,6 *կմ*^{2}, բն.՝ 11,3 մլն (2011): Վարչ. կենտրոնը՝ *Պորտու Ալեգրի*:

ՌԻՈՒ ԴՈՍԻ (Rio Doce), գետ Բրազիլիայի արլ-ում: Երկ.՝ 600 *կմ*, ավազանը՝ 87 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1100 *մ*^{3}/*վ*: Թափվում է Ատլանտ. օվկ-ը: Նավարկելի է Այմորես ք-ից ներքև:

ՌԻՈՒ ՆԵԳՐՈՒ (Rio Negro), գետ հիմնականում Բրազիլիայում, Ամազոնի ձախ վտակը, միջին հոսանքում սահմանային է Բրազիլիայի ու Կոլումբիայի և Բրազիլիայի ու Վենեսուելայի միջև: Երկ.՝ 2300 *կմ*, ավազանը՝ 691 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 29,3 հզ. *մ*^{3}/*վ*: Կոսիկյարե վտակով կապված է Օրինոկոյին: Նավարկելի է գետաբերանից 1000 *կմ*:

ՌԻՔԵԹՍ (Ricketts) Հաուարդ Թեյլոր (1871–1910), ամերիկացի բժիշկ և մանրէաբան: Առաջիններից է ուսումնասիրել հատուկ միկրոօրգանիզմներով (1916-ին կոչվել են *ռիքեթսիաներ*) հարուցված վարակիչ հիվանդությունը: Նկարագրել է ժայռոտ լ-ների տենդը (տզային ռիկետսիոզը):

ՌԻՔԵԹՍԻԱՆԵՐ (ամերիկացի գիտնական Հ. Թ. *Ռիկեթսի* անունով), բակտերիաների ընտանիք, որոնք վիրուսների նման բազմանում են տիրոջ օրգանիզմում: Օդակյաց են: Որոշ տեսակներ շարժուն են: Մարդու և կենդանիների ռիկետսիոզների հարուցիչներ են:

ՌԻՖ (նիդեռլ.՝ rif), արգելախութ, ծանծաղուտ. ծով. հատակի վերջրյա կամ ստորջրյա սուր բարձր-յուններ, որոնք խոչընդոտում են նավարկությունը:

ՌԻՖԵՐ, ժողդ Մարոկկոյում: Ընդ թիվը՝ 3 մլն (2004): Լեզուն՝ ռիֆ: Հավատացյալները սուննի մահմեդական են:

ՌԻՖՏ (անգլ.՝ rift – կիրճ, ճեղք), երկրակեղևի՝ մի քանի հարյուրից մինչև մի քանի հզ. *կմ* գծային բացվածքներ: Սովորաբար կապվում են երկրակեղևի ձգման ժամանակ առաջացած խզումնային խախտումների հետ: Լինում են մայրցամաք. և օվկիանոս.: Մայրցամաք. Ռ-երից ամենաբնորոշներն են Արաբա-աֆրիկ. Ռ-ային գոտին, Բայկալյան, Հռենոսյան, Հս. Ամերիկայի լ-շղթաների և հովիտների մարզի կամ Մեծ Ավազանի Ռ-երը: Օվկիանոս. Ռ-երը լայնորեն տարածված են Ատլանտ. և Խաղաղ օվկ-ներում:

ՌՄԲԱԿՈՂՈՒՉ, կործանիչ, ռազմ. ինքնաթիռ. նախատեսված է հակառակորդի վերերկրյա և ծով. օբյեկտները ռումբերով ու հրթիռներով ոչնչացնելու համար: Լինում են ճակատային (մարտ.), հեռահար (ռազմավար.) և տակտեական. (նավ.) Ռ-ներ:

ՌՄԲԱԿՈՂՈՒՉ ԱՎԻԱՑԻԱ, ավիացիոն ռումբերով և հրթիռներով վերերկրյա կամ ծով. օբյեկտների խոցման համար նախատեսված մարտ. ավիացիայի տեսակ: Ըստ լուծվող խնդիրների բնույթի և ինքնաթիռների թռիչքամարտավար. տվյալների՝ տարբերում են ճակատային և հեռահար (ռազմավար.) Ռ. ա.:

ՌՄԲԱՐԿՈՒ ԲԶԵԶՆԵՐ (Bombardier beetle), գնայուն բզեզների ընտանիքի ենթարնտանիք: Երկ.՝ 5–20 *մմ*: Պաշտպանվելիս արտանետում են այրող հեղուկ, որն օդում պայթելով փոխվում է գազի (այստեղից՝ անվանումը): Թրթուրներն այլ բզեզների հարսնյակների մակաբույծներ են:

«ՌՅԱ ԹԱՋԱ» («Նոր ուղի»), հաս., գր., մշակութ. կիսամսյա թերթ (1930-ից, Երևան՝ քրդ., 1938–55-ին լույս չի տեսել): Հայաստանի եզդի համայնքի պաշտոնաթերթը: Խմբ-ներ՝ Հարություն Մկրտչյան,

Գևորգ Պարիս, Հրաչյա Քոչար, Զարդոե Գենջո, Միրոե Ասադ, Տիտալե Ածո, Ամբրիկե Սարդար, Գրիշաե Սամե, Տիտալե Քյարամ (2010–ից):

ՌՅԱԶԱՆ, ք. ՌԴ–ում, համանուն մարզի վարչ. կենտրոնը՝ Օկա գետի ափին: Բն.՝ 510 հզ. (2009): Երկթեղ. հանգույց է: Հիմնադրվել է XI դ–ում:

ՌՅԱԶԱՆՈՎ Ալեքսեյ Կոնստանտինովիչ (1920–1992), ռուս օդաչու: Ավիացիայի գեն–մայոր (1970): ԽՄ հերոս (1943, 1945): ՀՄՊ–ում եղել է կործանիչ ավիացիայի էսկադրիլիայի հրամ.: Կատարել է 97 մարտ. թռիչք, անձամբ խփել 31, խմբում՝ 16 ինքնաթիռ:

ՌՅԱԶԱՆՈՎ Էլդար Ալեքսանդրովիչ (1927–2015), ռուս. կինոռեժ., դրամատուրգ: ԽՍՀՄ ժող. արտիստ (1984): Նկարահանել է կատակերգություններ՝ երգիծականից մինչև քնար. («Կառնավալային գիշեր», 1956, «Հուսարական բալլադ», 1962, «Զգուշացիր ավտոմեքենայից», 1966, «Ճակատագրի հեգնանք կամ Բաղնիքդ անուշ», 1976, հեռուստաֆիլմ, «Ծառայողական սիրավեպ», 1977, «Գարաժ», 1980, «Կայարան երկուսի համար», 1983, «Մոռացված մեղեդի ֆլեյտայի համար», 1988, «Զուշակություն», 1993, «Անդերսեն: Կյանքն առանց սիրո», 2006, ևն): Հեղինակ է սցենարների, վեպերի, պիեսների (մեծ մասը՝ Է. Վ. Բրագինսկու հետ), բանաստեղծությունների, ինքնակենսագր. «Չամփոփված արդյունքներ» (հրտ.՝ 2005), «Կատակերգության տխուր դեմքը կամ Վերջապես արդյունքների ամփոփում» (2010) գրքերի: ԽՍՀՄ (1977), ՌԽՖՍՀ (1979) Պետ. մրց–ներ:

ՌՅԱԶԱՆՈՎ Վասիլի Գեորգևիչ (1901–1951), ռուս. օդաչու, ավիացիայի գեն–լեյտ. (1943): ԽՄ հերոս (1944, 1945): ՀՄՊ–ի ժամանակ՝ գրոհիչ ավիացիայի կորպուսի հրամ.:

ՌՅԱԶԱՆՍԿԻ Միխայիլ Սերգեևիչ (1909–1987), ռուս. ռադիոտեխնիկ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1958): Սոց. աշխ. հերոս (1956): Աշխ–ները վերաբերում են հրթիռ. տեխնիկայի կառավարման համակարգերի մշակմանը: ԽՍՀՄ Պետ. (1943), Լենինյան (1957) մրց–ներ:

ՌՅՈՄ (Röhm) Էռնստ (1887–1934), կայսեր. նախարար Գերմանիայում՝ 1933–ից, գրոհ. ջոկատների շտաբի պետ՝ 1931–ից: Զգտել է իրեն ենթարկել բանակի գեներալիտետին: Գնդակահարվել է Հիտլերի սանկցիայով:

ՌՅՈՄԵՐ (Rømer) Օլե (1644–1710), դանիացի աստղագետ: Յուպիտերի արբանյակների դիտարկումով 1–ինն է որոշել լույսի արագությունը (1675): Պատրաստել է մի շարք գործիքներ, նաև միջօրեական շրջան և պասաժային գործիք:

ՌՅՈՅՍԴԱԼ (Ruysdael) Սալոմոն վան (1600/03–1670), հոլանդացի գեղանկարիչ: Հեղինակ է շագանակագույնի և կանաչի երանգների նուրբ հակադրությամբ, գետերի տեսարաններով, բարձր մշուշոտ երկնքով բնանկարների («Գետանցում լաստով», 1651, ևն):

ՌՅՈՊԿԵ (Röpke) Վիլհելմ (1899–1966), շվեյցարացի տնտեսագետ: «Սոցիալական շուկայական տնտեսության» տեսության ստեղծողներից:

ՌՅՈՍԿԻՆ, Ռասկին (Ruskin), Ջոն (1819–1900), անգլիացի գրող, արվ–ի տեսաբան: Հեղինակ է «Ժամանակակից գեղանկարիչներ» (հ. 1–5, 1843–60), «Ճարտարապետության յոթ ջահ» (1849), «Վենետիկի քարերը» (հ. 1–3, 1851–53), «Եթերի թագուհին» (1869) և մշակույթի տեսությանը վերաբերող այլ աշխ–ների:

ՌՅՈՒԴ (Rude) Ֆրանսուա (1784–1855), ֆրանսիացի քանդ.: Հեղինակ է դից. թեմաներով քանդակների («Մույկը կապող Մերկուրիոսը», 1827), «Մարսելյեզ» մոնումենտալ բարձրաքանդակի («Կամավորները կովի են ելնում 1792 թվականին», Փարիզի դր Գոլի հրապարակի Հաղթակամարի վրա), հուշարձանների (Մարշալ Նեյի, 1852–53, Փարիզի Աստղադիտարանի հրապարակ), գծանկարների:

ՌՅՈՒԴԻՆ (Rüdin) Էռնստ (1874–1952), գերմանացի հոգեբույժ, *ևվգենիկայի* ստեղծողներից է: Առաջիններից է հոգեբուժության մեջ կատարել (1911) ժառանգաբան. հետազոտություններ: Համագործակցել է նացիստ. ռեժիմի հետ:

ՌՅՈՒԿՅՈՒ, Նանսեյ, հրաբխ. և բուստ. կղզեխումբ Խաղաղ օվկ–ում: Պատկանում է Ճապոնիային: Զգվում է շուրջ 1200 *կմ*՝ Կյուսյու և Թայվան կղզիների միջև: Տարածքը՝ 4,8 *կմ²*, բն.՝ 1,5 մլն (2005): Բարձր.՝ մինչև 1935 *մ*: Գլխ. ք–ը՝ Նահա:

ՌՅՈՒՄԻՆ Վալերի Վիկտորովիչ (ծ. 1939), ռուս տիեզերագնաց օդաչու, փոխգնդ.: ԽՄ հերոս (1979, 1980): Ե. Վ. *Կոնդակովայի* ամուսինը: Կատարել է 4 տիեզ. թռիչք (1977, 1979, 1980, 1998)՝ որպես բորտինժեներ և մասնագետ: Ընդհ. տևողությունը՝ 371 օր 17 *ժ* 26 *ր*: 2–րդ թռիչքի ժամանակ դուրս է եկել բաց տիեզերք (1 *ժ* 23 *ր* տևողությամբ):

ՌՅՈՒՅՄԲՐՈՒԿ, Ռույսբրուկ (Ruysbroeck), Յան Վան (1293–1381), նիդեռլանդացի միստիկ, եկեղեց. գրող: Հռոմ. կաթոլիկ եկեղեցու սուրբ: Գրյոնենդալում (Բրյուսելի մերձակայք) հիմնադրել է կանոնիկոսների համայնք (1343): Հեղինակ է «Հոգևոր ամուսնության հանդերձը» և այլ աշխ–ների:

ՌՅՈՒՐԻԿՈՎԻՉՆԵՐ, ռուս իշխաններ, ըստ տարեգրության՝ Կիևի մեծ իշխան Իգորի, որ Ռյուրիկի որդին էր, հետնորդները: Ռ. գլխավորել են Հին Ռուս. պետությունը և ավատ. մասնատվածության շրջանում մեծ ու փոքր իշխանությունները: Մոսկվայի մեծ իշխանները և Ռուսաստանի ցարերը Վլադիմիր–Սուզդալյան Մոնոմախովիչների հետնորդներն էին: Ռ–ի վերջին ցարը Ֆեոդոր Իվանովիչն էր (1557–1598): Ռ–ի շառավիղները գոյատևել են մինչև XX դ–ի սկիզբը:

ՌՆԳԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, բթախոսություն, ձայնի հնչեղության խիստ թուլացում և երանգի փոփոխություն, որը զուգակցվում է խոսքի հնչյունների արտաբերման աղավաղման հետ: Պայմանավորված է բնածին կամ ձեռքբերովի անատոմ. խանգարումներով, որոնք վերացնելուց հետո անհրաժեշտ է լոգոպեդ. վարժություններ:

ՌՆԳԵՂՋՅՈՒՐՆԵՐ (Rhinocerotiade), միասմբակավորների կարգի կաթնասունների ընտանիք: Մարմնի երկ.՝ մոտ 2,5 *մ*, կ. զ.՝ մոտ 3,6 *տ*: Քթարմատի վրա կա 1 կամ 2 եղջյուր (երկ.՝ մոտ 1 *մ*): Հայտնի է 5 տեսակ՝ Հվ. և Հվ–արլ. Ասիայում (3) և Աֆրիկայում (2): Թվաքանակը կրճատվել է հիմնականում որսագողության պատճառով: Բոլոր տեսակները գրանցված են ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՌՆԹ, տես *Ռիբոնուկլեինաթթու*:

ՌՇՏՈՒՆԻ Գարեգին (1840–1879), դերասան: 1868–ից՝ Հակոբ *Վարդովյանի* թատրոնի դերասան (Թիբո՝ Ա. Մանասյանի «Զրադացպանի աղջիկը», Արգան՝ Մոլիերի «Երևակայական հիվանդ», ևն): Իտալ–ից և ֆրանս–ից փոխադրել է պիեսներ, գրել Տ. Չուխաճյանի «Քեռսե Քեհյա» օպերետի լիբրետոն:

ՌՇՏՈՒՆԻ Հեկտոր Գալուստի (1915–1998), գրականագետ, գրաքննադատ: Բանասիր. գիտ. դ–ր (1972), պրոֆ. (1973): Հեղինակ է «Գեղամ Սարյան» (1958), «Դանիել Վարուժան» (1961), «Սիամանթո» (1970), «Միսաք Մեծարենց» (1986) և այլ աշխ–ների:

ՌՇՏՈՒՆԻ Վահան Հարությունի (1894–1970), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1941), պրոֆ. (1943): ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1956): Աշխ–ները վերաբերում են Հայաստանում ցարիզմի ագրար. քաղաքանն ու գյուղաց. շարժումներին, արևելահայ հաս–քաղ. մտքի պատմությանը:

ՌՇՏՈՒՆԻՆԵՐ, Ռշտունիք, իշխան. (նախարար.) տոհմ Հին Հայաստանում: Գեղամ Հայկազունու որդի Սիսակի շառավիղներից, որոնց նախարար. կարգն ու աստիճանը մ. թ. ա. II դ–ում հաստատել է Վաղարշակ թագավորը: Ժառանգ. տիրույթն էր *Ռշտունիք* գվո–ը: Ռ–ի անունով Բզնունյաց ծովը (Վանա լիճ) զուգահեռաբար կոչվել է նաև Ռշտունյաց ծով: VII դ–ի վերջին և VIII դ–ի սկզբին՝ արաբ. նվաճողների համատարած գերեվարումներից ու կոտորածներից հետո, Ռ–ի աշխարհիկ ներկայացուցիչներն այլևս չեն հիշատակվում: Այնուհետև Ռշտունիք գվո–ը դարձել է Վասպուրականի հզոր տերերի՝ Արծրունիների սեփականությունը:

ՌՇՏՈՒՆԻՔ, գվո Վասպուրական նահանգում: Եղել է *Ռշտունիների* իշխանության (նախ–յան) ժառանգ. տիրույթը և կոչվել այդ տոհմի անունով: Ընդգրկել է Վանա լճի հվ. առափնյակը (ներառյալ Աղթամար և Արտի կամ Արտեր կղզիները)՝ հվ–ից տարածվելով մինչև Մոկս նահանգ–ը, արլ–ից՝ Հայոց ձոր, արմ–ից՝ Տուրուբերանի Երեվարք գվո–ները: Իշխանանիստ կենտրոնն էր *Ոստան* բք–ը: Մեծ Հայքում Արշակունյաց թագավորության անկումից (428) հետո Ռ. մտել է Մարզպան. Հայաստանի, VII դ–ի կեսից՝ Արմինիա վարչամիավորման, արաբ. տիապետության թոթափումից (IX դ–ի 2–րդ կես) հետո՝ Բագրատունյաց թագավորության կազմի մեջ: XX դ–ի սկզբից՝ օսմ. Թուրքիայի տիրապետության տակ: Ռ. հիմնականում համապատասխանում էր Կավաշ (Գյավաշ) գվո–ին, որն ուներ ավելի քան 20 հայաբնակ գյուղեր՝ շուրջ 10 հզ. բնակչությամբ: Գվո–ի հայերի զգալի մասը բնաջնջվել է 1915–ին՝ Մեծ եղեռնի ժամանակ:

ՌՈԱ ԲԱՍՏՈՍ (Roa Bastos) Ավգուստո (1917–2005), պարագվայցի գրող: Հեղինակ է «Ամպրոպ տերևների մեջ» (1953) պատմվածքների ժող–ի, «Մարդու որդին» (1960), «Ես՝ Դերագույնս» (1974) վեպերի: 1983–ից՝ Իսպանիայի քաղաքացի: «Միգել դե Սերվանտես» մրց. (1989):

ՌՈԱՆՈԿ (Roanoke), գետ ԱՄՆ–ում: Երկ.՝ 725 *կմ*, ավազանը՝ 25 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 230 *մ³/վ*: Թափվում է Ատլանտ. օվկ–ը: Նավարկելի է ստորին հոսանքում:

ՌՈԲԱԿԻՉԵ Գրիգոլ Տիտովի (1884–1962), վրացի գրող: Գրել է նաև ռուս., գերմ.: 1931–ից՝ Գերմանիայում: Հեղինակ է «Օձի կաշին» (1925–26), «Սպանված հոգին» (1933), «Գրաալի պահապանները» (1937) վեպերի, «Դևը և առասպելը» (1935) էսսեների ժող–ի, XX դ–ի սկզբի գրկ–յանը

վերաբերող գրաքննադատ. հոդվածների, նաև պիեսների:

ՌՈԲԲԻԱ (Robbia) դելլա, Վաղ Վերածննդի դարաշրջանի իտալացի քանդ–ների ընտանիք Ֆլորենցիայում: Քանդ–յան մեջ առաջինն են կիրառել գունավոր մայոլիկայի տեխնիկան: Ավագի՝ **Լուկա դելլա Ռ–ի** (1399/1400–1482) բարձրաքանդակներն աչքի են ընկնում պարզությամբ, նուրբ պլաստիկայով («Տիրամայրը մանկան հետ» ևն): Նրա զարմիկն ու աշակերտը՝ **Անդրեա դելլա Ռ.** (1435–1525), հեղինակ է Օսպեդալե դեյլի Իննոչենտիի ճակատի մեդալիոնների (1463–66), «Մարիամի և Եղիսաբեթի հանդիպումը» խմբապատկերի (1491, Սան Ջովաննի Ֆուորչիվիտաս եկեղեցի, Պիստոյա): Անդրեայի որդին՝ **Ջովաննի դելլա Ռ.** (1469–1529), բազմագույն մայոլիկայով կոմպոզիցիաների վարպետ է:

ՌՈԲ–ԳՐԻՅԵ (Robbe-Grillet) Ալեն (1922–2008), ֆրանսիացի գրող, կինոռեժ.: Ֆրանսիայի ակադ–ի անդամ (2004): «Նոր վեպ»–ի հիմնադիրներից: Հեղինակ է «Խանդ» (1957), «Լաբիրինթոսում» (1959), «Հեղափոխության նախագիծ՝ Նյու Յորքի համար» (1970), «Աստիճանաբար սահելով դեպի վայելքը» (1973), «Կրկնություն» (2001) և այլ վեպերի:

ՌՈԲԵՄՊԻԵՌ (Robespierre) Մաքսիմիլիեն Մարի Իզիդոր դը (1758–1794), Ֆրանս. մեծ հեղ–յան գործիչ, իրավաբան: Յակոբինյանների առաջնորդներից: 1793–ին փաստացի գլխավորել է հեղ. կառ–յունը: Նպաստել է *Լյուդովիկոս XVI*–ի մահապատժին, հեղ. տրիբունալի ստեղծմանը, ժիրոնդիստների առաջնորդների մահապատժին: Իր ձեռքում կենտրոնացրել է անսահմանափակ իշխանություն: Զանգված. տեռորի կազմակերպիչ: 1794–ի հուլիսի 27–ին Տերմիդորականները տապալել են *յակոբինյան դիկտատուրան*, Ռ–ին և նրա մերձավորներին առանց դատի գլխատել են:

ՌՈԲԵՐ (Robert) Հյուբեր (1733–1808), ֆրանսիացի գեղանկարիչ: Զբոսայգիների անտիկ ավերակների տեսարաններով դեկորատիվ պաննոները, նկարներն աչքի են ընկնում հարուստ երևակայությամբ, կատարման նրբությամբ («Սանդղավանդ Մաոլիում», 1783): Ռ–ի «Նիմի տաճարը» (1797), «Դեկորատիվ բնանկար» (1782) գործերը ՀԱՊ–ում են:

ՌՈԲԵՐՎԱԼ (Roberval, Պերսոնյե, 1602–1675), ֆրանսիացի մաթեմատիկոս: Բ. *Կավալիերիի* հետ մշակել է «անբաժանելիների» եղանակը:

ՌՈԲԵՐՏ ԳՐՈՍՄԵԹԵՄԹ (Մեծ Գլուխ – Robert Grosseteste, մոտ 1175–1253), անգլիացի սխոլաստ փիլ. և բնագետ, եպս.: Առաջադրել է ուսմունք լույսի մասին, որը համարել է սկզբնամատերիա, գիտ–յան հիմք է դիտարկել օպտիկան և երկրչփությունը: Եղել է Ռ. *Բեկոնի* ուսուցիչը:

ՌՈԲԵՐՏ ՔՈԼԵՋ, հիմնադրվել է 1869–ին Կ. Պոլսում՝ ամերիկացիներ՝ մեծահարուստ Քրիստոֆեր Ռոբերտի նվիրատվությամբ և միսիոներ Ս. Համլինի նախաձեռնությամբ: Համարվել է Նյու Յորքի համալսարանի մասնաճյուղը: Նպատակը այլազգի կադրեր պատրաստելն էր, որոնք պետք է ամերիկ. ազդեցությունը տարածեին Արևելքում: Ուսման տևողությունը՝ 12 տարի: Շրջանավարտներն ստացել են «պսակավոր արվեստից», «պսակավոր գիտությանց», «մագիստրոս արվեստից» կոչումներ: Ուսուցումը՝ անգլ–ով: Սակայն յուրաքանչյուր ուսանող ուսումնասիրել է նաև իր մայրենի լեզուն, ազգ. դպրությունն ու պատմությունը: Սաների գերակշիռ մասը հայեր, հույներ, բուլղարացիներ էին: Ռ. ք–ին կից գործել է «Հայ սանուց միությունը»: Փակվել է 1933–ին:

ՌՈԲԵՐՏՍ (Roberts) Ռիչարդ Ջոն (ծ. 1943), անգլիացի մոլ. կենսաբան: 1969–ից՝ ԱՄՆ–ում: Բացահայտել է (Ֆ. *Շարպի* հետ միաժամանակ, բայց նրանից անկախ) գենի ընդհատուն (էկզոն–ինտրոն.) կառուցվածքը: Նոբելյան մրց. (1993, Ֆ. Շարպի հետ):

ՌՈԲԻՆ ՀՈՒԴ (Robin Hood), անգլ. ժող. բալլադների հերոս (պայքարել է նորման. զավթիչների դեմ), ճնշվածների և չքավորների պաշտպան: Հիշատակվում է Ուս. Լենգլենդի, Վ. Շեքսպիրի գործերում, Բ. Ջոնսոնի «Տխուր հովվը» պաստորալի (անավարտ), Վ. Սկոտի «Այվենհո» վեպի հերոս:

ՌՈԲԻՆԵ (Robinet) Ժան–Բատիստ Ռընե (1735–1820), ֆրանսիացի փիլ.: Ընդունել է արարչագործության գաղափարը: Ըստ Ռ–ի՝ մատերիայի բոլոր ձևերը շնչավոր են: Հեղինակ է «Բնության մասին» (հ. 1–4, 1761–66) աշխ–յան:

ՌՈԲԻՆԻԱ, բակլազգիների ընտանիքի ծառերի կամ կիսաթփերի ցեղ: Հանդիպում է շուրջ 20 տեսակ, հիմնականում՝ Հս. և Կենտր. Ամերիկայում: Մի քանի տեսակ մշակովի է, հատկապես տարածված է սպիտակ ակացիան, որը Եվրոպա բերվել է XVII դ–ում, լավագույն մեղրատուներից է:

ՌՈԲԻՆՍ (Robbins) Լայոնել (1898–1984), անգլիացի տնտեսագետ, քաղտնտ–յան լոնդոն. դպրոցի ներկայացուցիչ: Տնտեսագիտ–յան առարկան համարել է սահման. օգտակարության տեսության սկզբունքների վրա հիմնված բաշխման հարաբերությունների հետազոտությունը:

ՌՈԲԻՆՍ Ֆրեդերիկ Չապմեն (1916–2003), ամերիկացի վիրուսաբան: Աշակել է (Ջ. *Էնդերսի* և Թ. Հ. *Ուելլերի* հետ) պոլիոմիելիտի վիրուսի աճեցման տեխնիկան, որը նպաստել է պոլիոմիելիտի դեմ վակցինայի ստեղծմանը: Նոբելյան մրց. (1954, Ջ. Էնդերսի և Թ. Հ. Ուելլերի հետ):

ՌՈԲԻՆՍՈՆ (Robinson) Էդվին Առլինգթոն (1869–1935), ամերիկացի բանաստեղծ: Հեղինակ է «Ընտրանի» (1922), «Կրկնակի մահացող մարդը» (1924) քնար. գործերի, նաև Արթուրապատումի մոտիվներով պոեմների («Տրիստան», 1927), չափածո դրամաների:

ՌՈԲԻՆՍՈՆ Մերի (ծ. 1944), Իռլանդիայի 1–ին կին նախագահ՝ 1990–97–ին: 1997–2002–ին՝ ՄԱԿ–ի մարդու իրավունքների պաշտպ–յան Գերագույն կոմիսար:

ՌՈԲԻՆՍՈՆ Ռոբերտ (1886–1975), անգլիացի քիմիկոս–օրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1966): Լոնդոնի թագավոր. ընկ–յան անդամ (1920, նախագահ՝ 1945–58–ին): Աշխ–ները վերաբերում են տես. օրգ. քիմիային, կենսաբանորեն ակտիվ նյութերի (գլխավորապես՝ ալկալոիդների) կառուցվածքին, սինթեզին և կենսասինթեզին: Նոբելյան մրց. (1947):

ՌՈԲՈՐՈՎՍԿԻ Վասիլի Իվանովիչ (1856–1910), ռուս. ճանապարհորդ: Մասնակցել է Ն. Մ. *Պրժևալսկու* (1879–80, 1883–85) և Մ. Վ. Պևցովի (1889–90)՝ Կենտր. Ասիա կատարած արշավներին: 1893–95–ին ղեկավարել է արշավախումբ, որն անցել է Արլ. Տյան Շանով, Նանշանով և Հս. Տիբեթով. հայտնագործել է մի շարք լ–շղթաներ, լճեր, ուսումնասիրել Տուրֆանի գոգհովիտը: Հավաքել է կենդր., բուսաբ. և երկրբ. հավաքածուներ:

ՌՈԲՍՈՆ (Robeson) Պոլ (1898–1976), ամերիկացի երգիչ (բաս), դերասան: 1921–ից՝ դրամատիկ. դերասան (Օթելլո՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», ևն), 1925–ից՝ երգիչ: Երգացանկում՝ նեգր. ժող., հակաֆաշիստ. և բողոքի թեմաներով երգեր, սպիրիչուելսներ ևն: Նկարահանվել է կինոյում: Խաղաղության միջազգ. (1950) և Լենինյան (1952) մրց–ներ:

ՌՈԳԳԵՎԵՆ (Roggeveen) Յակոբ (1659–1729), հոլանդացի ծովագնաց: 1721–23–ին ղեկավարել է շուրջերկրյա նավարկության արշավախումբը, որի նպատակը Չիլիից արմ. ենթադրյալ տարածքը գտնելն էր: 1722–ին հայտնագործել է *Զատկի կղզին*, Տուամոտու, Ընկերության, Սամոա կղզեխմբերի կղզիները:

ՌՈԳԻՆՍԿԻ Սիմոն Զալմանովիչ (1900–1970), ռուս. ֆիզքիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1939): Աշխ–ները վերաբերում են տարասեռ ռեակցիաների կատալիզին, կինետիկային, իզոտոպների քիմիային և դրանց կիրառությանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1949):

ՌՈԳԻԲ ՎԱՆ ԴԵՐ ՎԵՅԴԵՆ (Rogier van der Weyden, մոտ 1399–1464), Վերածննդի դարաշրջանի նիդեռլանդացի գեղանկարիչ: Հայտնի են «Խաչից իջեցնելը», «Խաչելություն» և այլ գործեր: Դիմանկարներն աչքի են ընկնում կերպարների արտահայտիչ բնութագրմամբ, ապրումների և ներաշխարհի բացահայտմամբ («Տղամարդու դիմանկար», մոտ 1455, ևն):

ՌՈԳՈԺՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ, XV դ–ի ռուս. տարեգրության համահավաք: Ընդգրկում է սլավոնների բնակեցումից մինչև 1412–ի դեպքերը: Հայտնաբերվել է Մոսկվայի Ռոգոժյան գերեզմանատան տարածքից պեղված ձեռագրերի հետ:

ՌՈԴ ԱՅԼԵՆԴ (Rhode Island), նահց ԱՄՆ–ի արլ–ում: Տարածքը՝ 3,2 հզ. *կմ*², բն.՝ մոտ 1 մլն (2015): Վարչ. կենտրոնը՝ *Փրովիդենս*:

ՌՈԴԱԿԻՈ Պերիկլիս (1923–2013), հույն գրող, թարգմանիչ: Դիմադրության շարժման մասնակից (1941–44): «Հիդրիա: Հունական և համաշխարհային մեծ հանրագիտարանի» գլխ. խմբ.: Հուն. է թարգմանել Վ. Հյուգոյի, Է. Հեմինգուեյի և ուր. ստեղծագործություններից, ասուրա–բաբել. «Գիլգամեշ» դյուցազներգությունը, Համմուրաբիի օրենսգիրքը: Հեղինակ է պատմագիտ. աշխ–ների, «Թուրքական ազգայնականությունը, Հայոց ցեղասպանությունը և Փոքր Ասիայի հույների ոչնչացումը» (1987) մենագրության:

ՌՈԴԱՐԻ (Rodari) Ջաննի (1920–1980), իտալացի գրող, մանկագիր: Դիմադրության շարժման մասնակից: Հեղինակ է «Ոտանավորների գնացքը» (1952) բանաստեղծությունների ժող–ի, «Չիպոլինոյի արկածները» (1951, հայ.՝ 1957), «Ձելսոմինոն խարերաների աշխարհում» (1959, հայ.՝ 1990) և այլ հեքիաթների, «Ստեղծագործական երևակայության քերականություն» (1973, հայ.՝ 2011) աշխ–յան: Հայ. հրատարակվել են նաև «Բարև երեխաներ» (1956), «Իտալական երգ» (2004) բանաստեղծությունների, «Երկնագույն նետի ճանապարհորդությունը» (1960), «Հեքիաթներ հեռախոսով» (2015) հեքիաթների ժող–ները, «Երկնագույն

նետը» (2015) վիպակը, «Անտեսանելի Տոնինոն» (2015) պատմվածքը:

ՌՈԴԲԵԼ (Rodbell) Մարտին (1925–1998), ամերիկացի կենսաքիմիկոս: Ուսումնասիրել է տարբեր ազդակների փոխանցման մեխանիզմները բջջի ներսում և բջիջների միջև: Ա. *Գիլմանի* հետ բացահայտել է միջնորդ՝ G սպիտակուցները, հաստատել նրանց դերն ազդանշան. *տրանսկրիպցիայում* (բջջում):

Նորելյան մրց. (1994, Ա. Գիլմանի հետ):

ՌՈԴԵԶԻԱ ՀԱՐԱՎԱՅԻՆ (Southern Rhodesia), անգլ. տիրույթ Հվ. Աֆրիկայում 1880-ական թթ–ից մինչև 1980-ը (1953–63-ին՝ Մեծ Բրիտանիայի ստեղծած Ռոդեզիայի և Նյասալենդի դաշնության կազմում): 1965-ին սպիտակամորթ փոքրամասնության հռչակած Հվ. Ռոդեզիայի անկախությունը պաշտոնապես չի ճանաչվել: 1980-ից՝ *Զիմբաբվեի Հանրապետություն*:

ՌՈԴԵԶԻԱ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ (Northern Rhodesia), անգլ. տիրույթ Կենտր. Աֆրիկայում 1911–64-ին (1953–63-ին՝ Մեծ Բրիտանիայի ստեղծած Ռոդեզիայի և Նյասալենդի դաշնության կազմում): 1964-ից՝ *Զամբիայի Հանրապետություն*:

ՌՈԴԵԶԻԱԿԱՆ ՄԱՐԴ, բրածո մարդ (120 հզ. տարի առաջ). գանգը հայտնաբերվել է 1921-ին Կաբվե ք–ի (Զամիա) մերձակա հանքահորում: Նախապես առանձնացվել է որպես ինքնուրույն տեսակ (Homo rhodesiensis): Այժմ հաճախ դասում են հեյդելբերգյան մարդու տեսակին:

ՌՈԴԵՆ (Rodin) Օգյուստ (1840–1917), ֆրանսիացի քանդ.: Կերպարների կենսունակությունը, գեղ. ծեփակերտումը, ձևի հստակությունը համադրել է մտահղացման դրամատիզմի և սիմվոլիզմի հետ («Բրոնզե դար», 1876, «Կալեի քաղաքացիները», 1884–88, «Դժոխքի դուռը» բարձրաքանդակ. կոմպոզիցիան՝ 1880-ից, այդ թվում՝ «Մտածողը», 1888, ևն): Ռ–ի «Մերկը» (1909) գծանկարը ՀԱՊ–ում է: Երևանի Ֆրանսիայի հրապարակում տեղադրվել է (2011, Ն. *Սարկոզիի* նվերը) Ռ–ի «Նկարիչ Ժյուլ Բաստիեն–Լեպաժի» արձանը:

ՌՈԴԵՈ (իսպ.՝ rodeo, < rodear – շրջապատել), կովբոյների սպորտ. մրցումներ, որը ներառում է վայրի ձիերի սանձահարումը, չընտելացված ձիով ձիավարությունը՝ առանց թամբի, օղապարանով վայրի ցուլ բռնելը, նրա սանձահարումը լասոյով, հեծնելը ևն: Տարածված է ԱՄՆ–ում, Կանադայում, Ավստրալիայում և այլուր:

ՌՈԴԵՍ (Rhodes) Ալեքսանդր դր (1591–1660), ֆրանսիացի միսիոներ–ճանապարհորդ, ուղեգրող: Քարոզել է Հվ. Չինաստանում, Ֆիլիպիններում, Ճապոնիայում, Իրանում: 1646-ին Ճավայից Հռոմ վերադառնալիս անցել է Հայաստանով: Իր ուղեգր. երկում (1653) նկարագրել է Երևանի, Էջմիածնի, Զուղայի շինությունները, գերեզմանատան 10 հզ. տապանաքարերը:

ՌՈԴԻՄՅԵՎ Ալեքսանդր Իլյիչ (1905–1977), ռուս զորահրամ., գեն–գնդ. (1961): ԽՄ հերոս (1937, 1945): 1936–39-ի Իսպանիայի քաղաքաց. պատերազմի մասնակից: ՀՄՊ–ի ժամանակ՝ գվարդ. հրաձգ. դիվիզիայի և գվարդ. հրաձգ. կորպուսի հրամ.:

ՌՈԴԻՆ Ալեքսեյ Գրիգորևիչ (1902–1955), ռուս. զորահրամ., տանկ. զորքերի գեն–գնդ. (1944): ԽՄ հերոս (1943): ՀՄՊ–ի ժամանակ՝ տանկ. բրիգադի և կորպուսի, տանկ. բանակի հրամ.: Ղեկավարել է Արմ. և 3–րդ Բելառուս. ռազմաճակատների զրահատանկ. և մեքենայացված զորքերը:

ՌՈԴԻՈՒՄ (Rhodium), Rh, տարրերի պարբեր. համակարգի VIII խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 45, ա. զ.՝ 102,9055, պլատինային մետաղ է: Անվանումը՝ հուն. rhodon – վարդ բառից (աղերը վարդագույն են): Ռ. սպիտակ, արծաթափայլ մետաղ է, խտ.՝ 12,41 $գ/սմ^3$, $t_{հալ.}$՝ 1963°C: Ռ–ի համաձուլվածքները պլատինի հետ օգտագործվում են ապակու հալման և քիմ. անոթներ, ապակե և վիսկոզի մանրաթելեր ձգելու, ջերմազույգեր, ոսկերչ. իրեր պատրաստելու համար և որպես կատալիզորդ:

ՌՈԴՆԻՆԱ Իրինա Կոնստանտինովնա (ծ. 1949), ռուս գեղասահորդուհի: ԽՍՀՄ ս. վ. վ. (1969): Օլիմպ. խաղերի (1972, 1976, 1980), Աշխարհի (1969–78) և Եվրոպայի (1969–78, 1980), ԽՍՀՄ (1970–71, 1973–75, 1977) չեմպիոն՝ գեղ. զուգասահքում (1962–72-ին՝ Ա. Ն. Ուլանովի, 1973-ից՝ Ա. Գ. Զայցևի հետ): 1990–2002-ին՝ Գեղասահքի միջազգ. կենտրոնի մարզիչ (Լեյք Էրբոու, Լոս Անջելեսի մերձակայքում): 2015-ին Ռ–ի անունով է կոչվել Երևանի գեղասահքի դպրոցը, որի վերաբացմանը մասնակցել է նաև գեղասահորդուհին:

ՌՈԴՈՊՆԵՐ, **Ռոդոպյան լեռներ**, Բալկան. թ–կղզում՝ Բուլղարիայում և Հունաստանում: Երկ.՝ մոտ 240 *կմ*, բարձր.՝ մինչև 2191 *մ* (Դոլյամ Պերելիկ լ.): Կան երկաթի, քրոմի, բազմամետաղների հանքավայրեր, հանք. աղբյուրներ, ջերմուկաբուժ. և կլիմ. առողջարաններ: Զարգացած է գրոսաշրջությունը:

ՌՈԴՈՍ, կղզի Էգեյան ծովում՝ Փոքր Ասիայի ափերի մոտ՝ Հվ. Սպորադյան կղզեխմբում (Հունաստան): Տարածքը՝ 1404 *կմ*^{2}, բն.՝ 115,5 հզ. (2011): Բարձր.՝ 1215 *մ*: Աշակում են ցիտրուսայիններ, խաղողի վազ, ձիթենի ևն: Անտիկ և միջնադար. շրջանի Ռ–ի ք–նվինգստ–ները Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում են:

ՌՈԴՈՍԹՈ, **Թեքիրդաղ**, ք. Թուրքիայի եվրոպ. մասում, Թեքիրդաղ վիլայեթի վարչ. կենտրոնը՝ *Սարմարա* ծովի հս. ափին: Բն.՝ 140,5 հզ. (2009): Հայտնի է Սև դա *Սևանի* «Ռոդոսթո–Ռոդոսթո» վեպը:

ՌՈԴՈՍԹՈՅԻ ԲԱՐԲԱՌ, հայ–ի «կը» ճյուղի բարբառ: Խոսվում է Եվրոպ. Թուրքիայի և Բուլղարիայի հայության որոշ շրջաններում (Ռոդոսթո, Մալկարա): Ունի երկաստիճան խլազուրկ (բ–փ, պ–բ) բաղաձայն. համակարգ:

ՌՈԴՈՍՅԱՆ ԾՈՎԱՅԻՆ ՕՐԵՆՔ, ծովագնացության և ծով. առևտրի կանոնների ժող., կազմվել է VII–VIII դդ–ում Բյուզանդիայում և պահպանվել որպես Էկլոգայի հավելված: Անվանումը կապվում է *Ռոդոս* կղզու հետ: Ամփոփում է հին և միջնադար. առևտրի ընթացքում ձևավորված իրավ. սովորույթներ և հռոմեացի իրավաբանների մշակած նորմեր՝ նավաշինության, նավավարության, բեռների և ուղևորների փոխադրման, վթարի դեպքում բեռների դուրսնետման մասին ևն: Օրենքի առանձին նորմեր կիրառվել են մինչև XV դ.:

ՌՈԴՍ (Rhodes) Սեսիլ Ջոն (1853–1902), անգլիացի գաղութ. գործիչ: 1880–90-ական թթ–ի սահմանագծին Ռ. ոգեշնչել և կազմակերպել է անգլ. նվաճումները Հվ. և Կենտր. Աֆրիկայում. զավթած տարածքների մի մասը, կազմելով գաղութ (1895), նրա անունով կոչվել է Ռոդեզիա: 1890–96-ին՝ Կապի գաղութի վարչապետ: 1899–1902-ի անգլո–բուրական պատերազմի նախաձեռնողներից:

ՌՈԴՐԻԳԵՍ (Rodriguez), կղզի Հնդ. օվկում՝ Մասկարենյան կղզեխմբում (Մավրիկիոս): Տարածքը՝ 111 *կմ*^{2}, բն.՝ 38,7 հզ. (2010): Հրաբխ. ծագման է՝ շրջապատված բուստերով: Բարձր.՝ մինչև 369 *մ*: Աշակում են շաքարեղեգ, բամբակենի, սրճենի, ծխախոտ: Գլխ. ք–ը՝ Պորտ Մատուրին:

ՌՈԶԱ (Rosa) Սալվատոր (1615–1673), իտալացի գեղանկարիչ, գրաֆիկ, բանաստեղծ, երաժիշտ (վիլահար): Կրոն., դից. կոմպոզիցիաները, հովիվների, թափառաշրջիկների, զինվորների կյանքից տեսարանները, կենցաղ. նկարները, ռոմանտիկ–երևակայական բնանկարները («Անտառային բնանկար երեք փիլիսոփայի հետ») առանձնանում են լուսաստվեր. արտահայտիչ հակադրություններով: XVII դ–ի իտալացի մի շարք կոմպոզիտորներ Ռ–ի ներբողների, կանտատների, կանցոնների տեքստերով գրել են երաժշտություն:

ՌՈԶԱՆՈՎ Եվգենի Գրիգորևիչ (1925–2006), ռուս. ճարտ.: ԽՍՀՄ ժող. ճարտ. (1983): ՌԴ Գեղարվ–ի ակադ–ի ակադ. (1983): Համահեղինակ է Տաշքենդի (1975), Տուլայի և Վլադիվոստոկի (երկուսն էլ՝ 1983–84) կենտր. հրապարակների կառուցապատման, Ղրիմում՝ առողջարան. համալիրների (1979), Տուլայում՝ Խորհուրդների տան (1984) նախագծերի:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1975, 1980):

ՌՈԶԱՆՈՎ Վասիլի Վասիլևիչ (1856–1919), ռուս գրող, հրապարակախոս, փիլ.: Հեղինակ է «Մեկուսացածը» (1912), «Աստվածաշնչյան պոեզիա» (1912), «Գրական պատոյալները» (1913), «Թափված տերևներ» (h. 1–2, 1913–15), «Մեր ժամանակի հայտնությունը» (1917–18) առանց այուժեի էսսեների ժող–ների, նաև Ն. Վ. Գոգոլի, Ֆ. Մ. Դոստոևսկու, Մ. Յ. Լերմոնտովի մասին գրաքննադատ. աշխ–ների:

ՌՈԶԵԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, **Ռոզեթյան քար**, հին եգիպտ. (հիերոգլիֆ և հանրամատչելի դեմոտիկյան գրերով) և հինհուն. նույնիմաստ արձանագրություններով բազալտե սալաքար: Հայտնաբերել է նապոլեոնյան բանակի սպա Բուշարը Եգիպտոսում՝ ռազմ. ամրաշինության ժամանակ (1799) Ռոզեթ (այժմ՝ Ռաշիդ) ք–ի մոտ: Պահպանվում է Բրիտ. թանգարանում (Լոնդոն): Բնագրերը փորագրվել են մ. թ. ա. 196-ին: 1882-ին մեհենադրոշմ բնագիրը վերծանել է Ֆ. *Շամպոլիոնը*՝ սկիզբ դնելով եգիպտ. հիերոգլիֆների ուսումնասիրման:

ՌՈԶԵՆԲԵՐԳ (Rosenberg) Ալֆրեդ (1893–1946), ֆաշիզմի գաղափարախոսներից, 1923-ից՝ նացիոնալ–սոց. կուս–յան «Ֆելկիշեր բեոբախտեր» գերմ.) պաշտոնաթերթի գլխ. խմբ.: 1933-ից՝ կուս–յան ներքաղ. բաժնի ղեկ., 1941-ից՝ օկուպացված արլ. տարածքների նախարար: Նյուրնբերգյան դատարանի վճռով ենթարկվել է մահապատժի:

ՌՈԶԵՆԲԼԱՏ (Rosenblatt) Ֆրենկ (1928–1971), հրեա հոգեբան, նեյրոֆիզիոլոգ և արհեստ. բանականության ոլորտի գիտնական: Աշակել է արհեստ. բանականության համակարգչ. մոդել:

ՌՈԶԵՆԲՈՒՇ (Rosenbusch) Կառլ Հենրիխ Ֆերդինանդ (1836–1914), գերմանացի ապարագետ և երկրաբան: Լեռն. ապարների բարակ թափանցիկ հեղուկներում

միներալների որոշման ֆիզ–օպտիկ. մեթոդի հիմնադիրներից, կատարելագործել է բևեռացման միկրոսկոպը:

ՌՈԶԻ (Rosi) Ֆրանչեսկո (1922–2015), իտալացի կինոռեժ.: Նկարահանել է սոցիալ. և քաղ. թեմաներով ֆիլմեր («Սալվատորե Ջուլիանո», 1961, «Մաթեիի գործը», 1972, «Հայտարարված մահվան ժամանակագրություն», 1987, «Ձինադադար», 1997), նաև «Երեք եղբայր» (1981, ըստ Ա. Պ. Պլատոնովի, «Երրորդ որդին» պատմվածքի մոտիվներով), «Կարմեն» ֆիլմ–օպերան (1983):

ՌՈԶԻՆԳ Բորիս Լվովիչ (1869–1933), ռուս. ֆիզիկոս, մանկավարժ: Ռուս. հեռուստատեսության գյուտարարը. 1–ինն է կատարել պատկերները հեռահաղորդելու փորձեր և ցուցադրել գործողության մեջ (1911):

ՌՈԶՈՎ Վիկտոր Սերգեևիչ (1913–2004), ռուս դրամատուրգ: Հեղինակ է «Բարի երթ» (1954), «Ուրախության փնտրտուքներում» (1957, կինոնկար՝ «Աղմկոտ օր», 1961), «Հավերժ ապրողները» (1957, կինոնկար՝ «Թռչում են կռունկները», 1957), «Անհավասար մարտ» (1960), «Հարսանիքի օրը» (1964), «Խլահավի բույնը» (1978) և այլ պիեսների, «Հոֆման» (հրտ.՝ 1996) կենսագր. դրամայի, ինքնակենսագր. երկի (1987), հուշագրության (2000): ԽՍՀՄ Պետ. մրց. (1967):

ՌՈԹ (Roth) Էլվին Էլիոթ (ծ. 1951), ամերիկացի տնտեսագետ: Զգալի ավանդ ունի խաղերի, շուկայի կառուցվածքի տեսությունների զարգացման և փորձարար. էկոնոմիկայի ոլորտում: Աշակել է կայուն բաշխման և շուկայի կառուցվածքի պրակտիկայի տեսություն: Նոբելյան մրց. (2012, Լ. *Շեփլիի* հետ):

ՌՈԹ Ֆիլիպ Միլթոն (ծ. 1933), ամերիկացի հրեա գրող: Հեղինակ է «Դեպք դերձակի հետ» (1969), «Իմ տղամարդկային ճշմարտությունը» (1974), «Ուրիշ կյանք» (1986), «Խաբեություն» (1990), «Մարդկային խարան» (2000), «Սովորական մարդ» (2006) և այլ վեպերի, «Դավադրություն Ամերիկայի դեմ» (2004) ֆանտաստիկ. վեպի: Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» շքանշան (2013), Պուլիցերյան (1998), Ֆրանց Կաֆկայի (2001), «Բուքեր» (2011) մրց–ներ:

ՌՈԹՄԱՆ (Rothman) Ջեյմս (ծ. 1950), ամերիկացի կենսաքիմիկոս: Բժշկ. գիտ. դ–ր (1976): ԱՄՆ ԳԱԱ անդամ: Հետազոտությունները վերաբերում են բջիջներում կարևոր փոխադր. համակարգի՝ բշտիկ. ուղու կարգավորող մեխանիզմների բացահայտմանը: Նոբելյան մրց. (2013, Ռ. *Շեկմանի* և Թ. *Զյուդհոֆի* հետ):

ՌՈԹՇԻԼԴՆԵՐ (Rothschild), ֆին. խումբ Արմ. Եվրոպայում: Հիմնադրել են Մ. Ա. Ռոթշիլդը (1744–1812, Ֆրանսիա), որը 1766–ին բանկ է հիմնել Մայնի Ֆրանկֆուրտում, և նրա 5 որդիները, որոնք բանկեր են հիմնել Վիեննայում, Նեապոլում, Փարիզում, Լոնդոնում, Մայնի Ֆրանկֆուրտում: ԵՀՊ–ից հետո իրենց նշանակությունը պահպանել են խմբի 2 առավել հայտնի՝ անգլ. (ֆին. կենտրոնը՝ «Ն. Մ. Ռոթշիլդ և որդիներ» լոնդոն. բանկ, հանքարդյունահանող ընկ–ներ Հվ. Աֆրիկայում, նավթ. արդ–յուն և գունավոր մետաղագործություն) և ֆրանս. (ֆին. կենտրոնը՝ Ռոթշիլդ Բանկ և ներդրում. հոլդինգ. ընկ.) ճյուղերը:

ՌՈԹՇՏԵՅՆ (Rothstein) Թեոդոր (Theodore) Արոնովիչ (1871–1953), հրեա պատմաբան, դիվանագետ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939): 1924–25–ին՝ Մոսկվայի Համաշխ. տնտ–յան և քաղ–յան ինստ–ի տնօրեն: Հեղինակ է բանվ. շարժման, գաղութ. քաղ–յան և միջազգ. հարաբերությունների վերաբերյալ աշխ–ների:

ՌՈԹՎԵՅԼԵՐՆԵՐ (գերմ.՝ Rotveiler), ծառայող. շների ցեղ: Ստացվել է Գերմանիայում XX դ–ի սկզբին: Բուծում են մի շարք երկրներում՝ պահակ. և որոնող. ծառայության համար:

ՌՈԺԱՆՍԿԻ Դմիտրի Ապոլինարովիչ (1882–1936), ռուս. ֆիզիկոս, ռադիոֆիզիկայի և ռադիոտեխնիկայի ռուս. դպրոցի հիմնադիրը: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1933): Ն. Ա. *Ռոժանակու* եղբայրը: Ղեկավարել է 1–ին ռուս. կարճալիք. հաղորդիչների ու իմպուլս. տեղորոշիչների մշակման աշխ–ները:

ՌՈԺԱՆՍԿԻ Նիկոլայ Ապոլինարիևիչ (1884–1957), ռուս. ֆիզիոլոգ: ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1945): Դ. Ա. *Ռոժանակու* եղբայրը: Առաջարկել է սպիտակուցների սննդ. արժեքի ցուցանիշ: Աշխ–ները վերաբերում են ախորժակի, աշխ–ի, արյան շրջանառության ֆիզիոլոգիային:

ՌՈԺԴԵՍՏՎԵՆՍԿԻ Գենադի Նիկոլաևիչ (ծ. 1931), ռուս. դիրիժոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1976): Սոց. աշխ. հերոս (1990): Շվեդիայի ակադ–ի պատվ. անդամ (1975): 1951–83–ին (ընդհատումով)՝ Մոսկվայի Մեծ թատրոնի դիրիժոր, 1965–70–ին՝ գլխ. դիրիժոր, 2000–01–ին՝ գեղ. տնօրեն, 1961–74–ին՝ Համամիութ. ռադիոյի և հեռուստատեսության Մեծ սիմֆոնիկ նվագախմբի գլխ. դիրիժոր և գեղ. ղեկ.: 1974–85–ին՝ Մոսկվայի կամեր. երաժշտ. թատրոնի, 1981–ից՝ ԽՍՀՄ ՄՆ սիմֆ. նվագախմբի (1991–ից՝ Ռուսաստանի սիմֆ. կապելլա) գլխ. դիրիժոր: Լենինյան (1970), ՌԴ Պետ. (1995) մրց–ներ:

ՌՈԺԴԵՍՏՎԵՆՍԿԻ Դմիտրի Սերգեևիչ (1876–1940), ռուս. ֆիզիկոս: Ռուս. օպտիկ. արդ–յան կազմակերպիչներից, օպտիկների լենինգրադյան դպրոցի հիմնադիրը: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1929): Օպտիկ. ինստ–ի հիմնադիր–տնօրենը (1918–32): Աշխ–ները վերաբերում են մետաղների գոլորշիներում լույսի անոմալ դիսպերսիային, ատոմ. սպեկտրադիտմանը, մանրադիտակի տեսությանը:

ՌՈԺԴԵՍՏՎԵՆՍԿԻ Ռոբերտ Իվանովիչ (1932–1994), ռուս բանաստեղծ: Հեղինակ է «Իմ հասակակցին» (1962), «Վիթխարի երկինք» (1975), «Քաղաքի ձայնը» (1977), «Յոթանասունականներ» (1980), «Տարիք» (1988), «Անքնություն» (1991) և այլ ժող–ների, «Ռեքվիեմ» (1961), «Նամակ երեսուներորդ դարին» (1963), «210 քայլ» (1978) և այլ պոեմների, ուղեգր. ակնարկների ժող–ի (1971): Ռ. բազմաթիվ երգերի տեքստերի հեղինակ է: Հայ. հրատարակվել է «Սիրտը ձեռքի մեջ» (1968) ժող–ը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1979):

ՌՈԺԴԵՍՏՎԵՆՍԿԻ Սերգեյ Վասիլևիչ (1868–1934), ռուս պատմաբան: ՌԳԱ թղթ. անդամ (1920): 1929–ին ձերբակալվել է «Ակադեմիական գործով»: Աշխ–ները վերաբերում են Ռուսաստանի XIV–XVII դդ–ի սոցիալ–տնտ. և քաղ. պատմությանը, XVIII–XX դդ–ի ժող. լուսավորության պատմությանը:

ՌՈԺԴԵՍՏՎԵՆՍԿԻ Վալերի Իլյիչ (1939–2011), ռուս տիեզերագնաց օդաչու, ճարտարագետ–գնդ.: ԽՄ հերոս (1976): 1976–ի հոկտ. 14–16–ը, որպես բորտինժեներ, թռիչք է կատարել «Սոյուզ–23» տիեզերանավով:

ՌՈԺԵՐ (Roger) II (մոտ 1095–1154), Սիցիլիայի թագավորության հիմնադիրը և 1–ին թագավորը՝ 1130–ից՝ Օտվիլեյների հարստությունից: Սիցիլիայի կոմս (1105), Ապուլիայի հերցոգ (1127):

ՌՈԺԻԵ (Rogier) Շառլ Լատուր (1800–1885), Բելգիայի վարչապետ՝ 1847–52 և 1857–68–ին: Լիբերալների առաջնորդներից: Իրականացրել է մի շարք բարենորոգումներ (հակակղեր., դպրոց. ևն):

ՌՈԺԿՈՎ Իվան Սերգեևիչ (1908–1971), ռուս երկրաբան: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1960): Աշխ–ները վերաբերում են ռուկու, պլատինի և այմաստների ցրոնների երկրբ–յանը, որոնմանն ու հետախուզմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950, 1951):

ՌՈԼԱՆ (Ռոլան դը Լա Պլատեր, Roland de La Platière) Ժան–Մարի (1734–1793), Ֆրանս. մեծ հեղ–յան ժամանակ ժիրոնդիստների կառ–յան մեջ ՆԳ նախարար (1792–ի մարտ–հունիս, 1792–ի օգոստ–1793–ի հունվ.): Կնոջ՝ Ժաննա Մարիի (1754–1793) գր–քաղ. խմբակում (Փարիզ) հավաքվել են ժիրոնդիստների պարագլուխները (Ժ. Ա. Ն. Կոնդորսե, Ժ. Պետիոն ևն): Մահապատժի են ենթարկել յակոբինյանները:

ՌՈԼԱՆ (Rolland) Ռոմեն (1866–1944), ֆրանսիացի գրող: «Ռևյու դ'իսթուար է քրիթիք մյուզիկալ» (Ֆրանս., 1901) հանդեսի հիմնադիրներից: Հեղինակ է «Ժան Քրիստոֆ» (հ. 1–10, 1904–12, հայ.՝ հ. 1–5, 1937–48) վեպ–էպոպեայի, «Կոլա Բրյունյոն» (1914, հրտ.՝ 1918) վիպակի, Ֆրանս. մեծ հեղ–յան մասին «Դայլեր» (1898), «Բանականության հաղթանակը» (1899), «Ռոբեսպիեր» (1939), «Սիրո և մահվան խաղը» (1925) դրամաների, «Հմայված հոգին» (1922–23, հայ.՝ հ. [1]–3, 1975–78) վեպի, Միքելանջելոյի (1907), Լ. Ն. Տոլստոյի (1911), Մ. Գանդիի (1923), Շ. Պեգիի (1944) գեղ. կենսապատումների, «Բեթհովեն: Ստեղծագործական ժամանակաշրջաններ» (հրտ.՝ 1928–49) երաժշտագիտ. ուսումնասիրությունների շարքի: Եվրոպայի մի շարք նշանավոր հաս. և մշակութ. գործիչների հետ Ռ. իր բողոքի ձայնն է բարձրացրել ընդդեմ Հայոց ցեղասպանության: Նոբելյան մրց. (1915):

ՌՈԼԻ (Raleigh), ք. ԱՄՆ–ում, Հս. Կարոլինա նահց–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 422 հզ. (արվարձաններով՝ 1,1 մլն, 2010): Ֆին. և առևտր. կենտրոն է: Գործում է ԳՀ պարկ (բարձր տեխնոլոգիաների բնագավառի մշակումներ), համալսարան:

ՌՈԼԼԵ (Rolle) Անտոնի Յուզեֆ (Դոկտոր Անտոնի Յ., 1830–1894), ֆրանսիացի հայագետ, բժիշկ, գրող: Աշխ–ներում անդրադարձել է Կամենեց–Պոդոլսկի հայկ. գաղթավայրի պատմությանը, տվել հայկ. թաղամասի տեղագր. նկարագրությունը, լուսաբանել հայերի իրավ. վիճակը ևն: Պոդոլիեի հայերին անդրադարձել է նաև իր գեղ. գործերում («Խաչի ներքո», «Ծայրագավառային քաղաքի ճակատագիրը», «Վարդապետը»):

ՌՈԼԼԻ ԹԵՈՐԵՄ, եթե հարթ կորի 2 ծայրերի օրդինատները միմյանց հավասար են, ապա կորի վրա կգտնվի կետ, որի շոշափողը զուգահեռ է աբսցիսին: Ձևակերպել է ֆրանսիացի մաթեմատիկոս Միշել Ռոլը (Michel Rolle, 1652–1719):

ՌՈԿԱ (Roca), Եվրոպա մայրցամաքի ամենաարմ. (արմ. երկայն–յան 9°31′) հրվանդանը Պիրենեյան թ–կղզում (Պորտուգալիա):

ՌՈԿԻՏԱՆՍԿԻ (Rokitansky) Կառլ Ֆոն (1804–1878), ավստրիացի ախտաբան, վիեննա. նոր դպրոցի հիմնադիր և ղեկ.: Վիեննայի ԳԱ անդամ (1848, նախագահ՝ 1869–ից): Հումորալ ախտաբանության ներկայացուցիչ:

ՌՈԿՈԿՈ (ֆրանս.՝ rococo, < rocaille – քարի բեկորներ), ոճ. ուղղություն XVIII դ–ի 1–ին կեսի եվրոպ. արվ–ում: Ռ–ին բնորոշ են երևակայությունը, թատերականացված խաղերը, դից. և հովվերգ. սյուժեները, էրոտիկ իրավիճակները ևն: Ռ–ի քանդյան մեջ գերիշխել են հարթաքանդակները ևն ու արձանները, կիսանդրիները, փոքր խմբաքանդակները, դեկորատիվ-կիրառ. արվ–ում՝ նրբաճաշակությունը, անհամաչափ կոմպոզիցիաները ևն:

ՌՈԿՈՍՈՎՄԿԻ Կոնստանտին Կոնստանտինովիչ (1896–1968), ԽՍՀՄ (1944), Լեհաստանի (1949) մարշալ: ԽՄ հերոս (1944, 1945): Մասնակցել է ԱՀՊ–ին, Քաղաքաց. պատերազմին Ռուսաստանում (1918–20): ՀՄՊ–ի ժամանակ՝ կորպուսի, բանակի, ռազմաճակատի [Բրյանսկի, Դոնի (Ստալինգրադի ճակատամարտ), Կենտր., Բելոռուս., 1–ին և 2–րդ Բելոռուս.] հրամ.: 1945–ի հունիսի 24–ին գլխավորել է Հաղթանակի շքերթը Մոսկվայում: 1945–49–ին՝ Հս. զորախմբերի գլխ. հրամ.: 1949–ին՝ ԼԺՀ ազգ. պաշտպ–յան նախարար և ՆԽ նախագահի տեղակալ: 1956–57–ին՝ ԽՍՀՄ պաշտպ–յան նախարարի տեղակալ, 1957–58–ին՝ Անդրկովկասյան ՋՕ հրամ., 1958–62–ին՝ ԽՍՀՄ պաշտպ–յան նախարարի տեղակալ և գլխ. տեսուչ, 1962–ից՝ ԽՍՀՄ ՊՆ գլխ. տեսուչների խմբի ղեկ.:

ՌՈԿՈՏՈՎ Ֆեոդոր Ստեպանովիչ (1735–1808), ռուս. գեղանկարիչ: Բարդ գունաերանգով, խորապես բանաստեղծ. դիմանկարները տոգորված են մարդու հոգևոր և ֆիզ. գեղեցկության գիտակցմամբ («Վարդագույն զգեստով անծանոթուհին», 1770–ական թթ., «Վ. Ե. Նովոսիլցովա», 1780, ևն): Ռ–ի «Անհայտ կնոջ դիմանկարը» (1770) ՀՍՊ–ում է:

ՌՈԿՊԵԼՆԻՍ (Rokpelnis) Ֆրիցիս (1909–1969), լատիշ գրող: Հեղինակ է «Տարեկանի հաց» (1959) և այլ բանաստեղծությունների ժող–ների, «Ռայնիսի պատանեկությունը» (1948), «Հիշի՛ր կանաչ եղևնիները...» (1966) պիեսների, «Ռայնիս» (Վ. Կրեպսի հետ, 1949) կինոսցենարի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

ՌՈԿՖԵԼԼԵՐՆԵՐ (Rockefeller), ԱՄՆ ֆին. խումբ: Ձևավորվել է XIX դ–ի վերջին: Հիմնադիր՝ Ջոն Դեվիսոն Ռոկֆելլեր Ավագ (1839–1937): Արդ. հիմքը «Սթանդարդ Օյլ Քամփընի (Նյու Ջերսի)» (1973–ից՝ «Էքսոն») նավթ. ընկ–ն է, ֆին. կենտրոնը՝ Չեյզ Մանհեթեն բանկը: Ազդեցության ոլորտները՝ արդ–յան (էլեկտրատեխնիկա, մեքենաշինություն), վարկաֆին. ինստ–ներ, կյանքի ապահովագրություն: 1980–ից խմբի դերը նվազել է, սեփականության զգալի մասը՝ վաճառվել:

ՌՈՀ (Roh) Ֆրանց (1890–1965), գերմանացի պատմաբան, լուսանկարիչ, մշակույթի տեսաբան: Ներմուծել է (1925) ***մոգական ռեալիզմ*** եզրույթը՝ գեղանկարչ. ոճը բնութագրելու համար:

ՌՈՄ Միխայիլ Իլյիչ (1901–1971), ռուս. կինոռեժ., մանկավարժ: ԽՍՀՄ ժող. արտիստ (1950): Նկարահանել է «Տասներեքը» (1937), «Լենինը հոկտեմբերին» (1937), «Լենինը 1918 թվականին» (1939), «Երազանք» (1943), «Տարվա ինն օրը» (1962) գեղ., «Սովորական ֆաշիզմ» (1966), «Միևնույն է, հավատում եմ» (1976–ին ավարտել են Մ. Մ. Խուցիևը, Է. Գ. Կլիմովը, Գ. Ն. Լավրովը) վավերագր–հրապարակախոս. և այլ ֆիլմեր:

ԽՍՀՄ (1941, 1946, 1948, 1949, 1951), ՌԽՖՍՀ Վասիլի եղբայրների անվ. (1966) Պետ. մրց–ներ:

ՌՈՄ (անգլ.՝ rum), թունդ սպիրտ. խմիչք, ստանում են շաքարեղեգնի հյութը խմորելով ու թորելով՝ հետագայում հնեցնելով կաղնե տակառներում:

ՌՈՄԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, բանասիրության բնագավառ. ուսումնասիրում է ռոման. լեզուները, ռոման. ժողղ–ների գրկ–ը, բանահյուսությունն ու մշակույթը:

ՌՈՄԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, հնդեվրոպ. լեզվաընտանիքի ճյուղ: Ներառում է ֆրանս–ը, պրովանսալ–ը, իսպ–ը, պորտուգ–ը, կատալան–ը, իտալ–ը, սարդին–ը, ռում–ը, մոլդավ–ը, ռետոռոման–ը: Առաջացել են լատ–ի և տեղական լեզուների փոխադարձ ազդեցություններով, նաև լատ–ի հիմքով: Ռ. լ–ին են պատկանում նաև մեռած լատ–ը, օսկեր–ը, ումբրեր–ը, գրավոր հուշարձաններով պահպանված մի շարք այլ մեռած լեզուներ՝ «իտալիկ լեզուներ» անվանմամբ:

ՌՈՄԱՆԱԿԱՆ ՈՃ, եվրոպ. արվ–ի ոճ X–XII դդ–ում (որոշ տարածաշրջաններում՝ մինչև XIII դ.): ***Ճարտարապետության մեջ*** ռոման. բազիլիկ կառույցները հարստացել են նոր տարրերով. նրանք պարզ ծավալների համակարգ են, որոնց ճակատների գեղազարդումներն ունեն ճարտ. ձևեր (կամարակապ պատնաշար, դուրս երկարող շքամուտք, խորշերի շարժ ևն): Ռ. ո–ի տաճարներում գերիշխել են վաղքրիստ. ճարտ–յունից ժառանգած բազիլիկ և կենտրոնակազմ եկեղեցիների (Ֆլորենցիայի մկրտարան, XI–XII դդ., հայկ.՝ Ծովիզի, V դ., Ագարակի, VII դ., ևն) տիպերը, նաև մոնումենտալ բարձրաքանդակները, բուս. և կենդ. մոտիվներով զարդանախշերը ևն: ***Կերպարվեստում*** Ռ. ո–ին բնորոշ են ընդհանրացված ձևերը, իրական չափերից շեղումը, առավել վառ արտահայտչականությունը, բյուզ. արվ–ի ազդեցությունը, մանրանկարչության և կիրառ–դեկորատիվ արվ–ի ծաղկումը ևն:

ՌՈՄԱՆԵՆԿՈ Յուրի Վիկտորովիչ (ծ. 1944), ռուս տիեզերագնաց օդաչու, գնդ.: ԽՄ հերոս (1978,1980): Թռել է «Սոյուզ–25, –27» և «Սալյուտ–6» (1977–ի դեկտ–1978–ի մարտ), «Սոյուզ–38» և «Սալյուտ–6» (1980–ի սեպտ.), «Սոյուզ ՏՄ–2» և «Միր» (1987) ուղեծր. համալիրով: Թռիչքի ընդհ. տևողությունը՝ 450 օր 18 *ժ* 20 *ր* (1998–ին ճանաչվել է ռեկորդային, գրանցվել է Գինեսի գրքում):

ՌՈՄԱՆԻՄ. (Romagna), **Ռոմագենիա**, պատմ. մարզ Հս. Իտալիայում: «Ռ.» անվանումը ծագել է VI դ–ում և վերաբերել է Ապենինյան թ–կղզու բյուզ. տիրույթներին, մասնավորապես՝ Ռավեննայի էկզարխատին: XVI–XVIII դդ–ում հիմնականում ներառվել է Պապ. մարզի կազմում: Ներկայում Իտալիայի Էմիլիա Ռոմանիա վարչ. մարզի մաս է:

ՌՈՄԱՆԿՈՎ Ալեքսանդր Անատոլևիչ (ծ. 1953), ռուս. սուսերամարտիկ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1988): Օլիմպ. չեմպիոն՝ թիմ. մրցում–ներում (1988, Սեուլ):

ՌՈՄԱՆՇ (Romanche), խորջրյա փողրակ Ատլանտ. օվկ–ում՝ հասարակածի մոտ: Երկ.՝ 230 *կմ*, միջին լայն.՝ 9 *կմ*, առլգն խոր.՝ մինչև 7856 *մ*:

ՌՈՄԱՆՇԵՐԵՆ, Շվեյցարիայի ազգ. լեզու–ներից: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի ռոման. ճյուղին: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՌՈՄԱՆՈՆԵՍ (Romanones), կոմս Ֆիգերոա ի Տորես Ալվարո (1863–1950), Իսպանիայի վարչապետ՝ 1912–14, 1915–17 և 1918–19–ին, Իսպանիայի ազատական կուս–յան առաջնորդը (1912–ից):

ՌՈՄԱՆՈՍ I (Romanos) Լակապենոս (ծ. թ. անհտ–948), Բյուզանդիայի կայսր՝ 920–944–ին՝ ***Մակեդոնական (հայկական) հարստությունից***: Եղել է ծովակալ, մանկահասակ կայսր ***Կոստանդին VII Ծիրանածինի*** խնամակալը (919), որի հետ ամուսնացնելով իր դուստր Հելենին՝ դարձել է «կայսերահայր», հռչակվել կայսերակից, ապա՝ կայսր: Պատերազմել է Բուլղարիայի և արաբների դեմ: Կայսրության սահմանները հասցրել է մինչև Եփրատ և Տիգրիս: 941–ին պարտության է մատնել Կիևյան Ռուսիայի իշխան Իգորին, իսկ 944–ին նրա հետ կնքել հաշտության պայմանագիր: 944–ին գահընկեց են արել որդիները, աքսորել Պրոտե կղզի:

ՌՈՄԱՆՈՍ II (ծ. թ. անհտ–963), Բյուզանդիայի կայսր՝ 959–ից՝ ***Մակեդոնական (հայկական) հարստությունից***. ***Կոնստանդին VII Ծիրանածինի*** որդին: 961–ին Ռ. II–ի դեմ կազմակերպվել է անհաջող դավադրություն: Ենթադրվում է, որ մահացել է թունավորումից:

ՌՈՄԱՆՈՍ III Արգիրոս (մոտ 968–1034), Բյուզանդիայի կայսր՝ 1028–ից՝ ***Մակեդոնական (հայկական) հարստությունից***: Պատերազմել է արաբների դեմ: Զգտելով իր ազդեցությունը տարածել Հայաստանում՝ 1030–ին իր զարմուհուն կնության է տվել «Մեծ Հայքի էքսուսիարխին» (հավանաբար՝ Հայոց թագավոր Հովհաննես-Սմբատի եղբայր Աշոտին): Ռ. III–ի օրոք արաբներից ազատագրվել են Եդեսիան (1032) և Բերկրին (1034): Խեղդամահ են արել բաղնիքում:

ՌՈՄԱՆՈՍ IV Դիոգենես (ծ. թ. անհտ–1072), Բյուզանդիայի կայսր՝ 1068–71–ին: Սելջուկ–թուրքերի դեմ պայքարելու համար վերակազմել է բանակը: 1071–ին պարտվել է ***Մանազկերտի ճակատամարտում*** և գերի ընկել: Ազատվել է Ալփ Արսլանին զիջելով Մանազկերտը, Եդեսիան, Անտիոքը և ամենամյա հարկ տալու պայմանով: 1071–ի հոկտ–ին գահընկեց է արվել: Հայկ. աղբյուրներում ներկայացված է որպես հայադավանության հալածող:

ՌՈՄԱՆՈՍ ԿՈՒՐԿՈՒԱՍ, X դ–ի բյուզանդացի զորավար՝ Կուրկուասների հայազգի բյուզ. նշանավոր (IX–XII դդ.) տոհմից: ***Թեոփիլոսի*** որդին: Ստացել է պատրիկի պատվաստիճան և հաջորդաբար նշանակվել մի շարք բանակաթեմերի զորավար:

ՌՈՄԱՆՈՎ Յուրի Ալեքսանդրովիչ (1926–2010), ռուս ֆիզիկոս-տեսաբան: Սոց. աշխ. հերոս (1961): Աշխ–ները վերաբերում են նեյտրոններին, պայթյունի ֆիզիկային, միջուկ. և ջերմամիջուկ. ռեակցիաներին:

ԽՍՀՄ Պետ. (1953, 1975), Լենինյան (1958) մրց–ներ:

ՌՈՄԱՆՈՎՆԵՐ, ռուս բոյար. տոհմ, 1613–ից՝ ցար., 1721–ից՝ կայսեր. հարստություն Ռուսաստանում, կառավարել են մինչև 1917–ի փետր–ը: Ռ–ի նախահայրն Անդրեյ

Իվանովիչ Կոբիլան է (XIV դ–ի կես): 1613–ին Զեմստվային ժողովը ցար է հռչակել Միխայիլ Ֆեոդորովիչին (1613–45): Այնուհետև ռուս. գահին տիրել են Ալեքսեյ Միխայլովիչը (1645–76), Ֆեոդոր Ալեքսեևիչը (1676–82), Պետրոս I Մեծ Ալեքսեևիչը (1682–1725, որի օրոք Ռուսաստանը դարձել է կայսրություն, իսկ Պետրոս I–ը՝ առաջին կայսրը), Եկատերինա I–ը (Պետրոս I–ի կինը, 1725–27), Պյոտր II–ը (Պետրոս I–ի թոռը, որի մահով վերջացել է Ռ–ի ուղիղ արական սերունդը, 1727–30), Աննա Իոանովնան (Ալեքսեյ Միխայլովիչի թոռը, 1730–40), Ելիզավետա Պետրովնան (Պետրոս I–ի դուստրը, որի մահով վերջացել է նաև Ռ–ի հարստության իգական ճյուղը, 1741–61), Պյոտր III–ը (Պետրոս I–ի թոռը, 1761–62), ապա կինը՝ Եկատերինա II–ը (1762–96), այնուհետև նրանց որդին՝ Պավել I–ը (1796–1801) և նրա ժառանգները՝ Ալեքսանդր I–ը (1801–25), Նիկոլայ I–ը (1825–55), Ալեքսանդր II–ը (Նիկոլայ I–ի որդին, 1855–81), Ալեքսանդր III–ը (Ալեքսանդր II–ի որդին, 1881–94), Նիկոլայ II–ը (Ալեքսանդր III–ի որդին, 1894–1917): Ռ–ի հարստությունը տապալվել է 1917–ի Փետր. բուրժուա–դեմոկրատ. հեղ–յան ժամանակ [1917–ի մարտի 2(15)–ին Նիկոլայ II–ն ստորագրել է գահից հրաժարականը]: 1918–ի հուլիսին Եկատերինբուրգում (այժմ՝ Սվերդլովսկ), որտեղ աքսորված էր ցար. ընտանիքը, Նիկոլայ II–ը և նրա ընտանիքը գնդակահարվել են: Ռ–ի առանձին ներկայացուցիչներ տարագրվել են:

ՌՈՄԱՆՆ (իսպ.՝ romance, < լատ. romanice – ռոմաներեն), երաժշտաբանաստեղծ. ստեղծագործություն ձայնի համար՝ գործիքի նվագակցությամբ (հիմնականում՝ դաշնամուրի և կիթառի), կամեր–վոկալ. երաժշտության ժանր: Տերմինը ծագել է միջնադար. Իսպանիայում, ապա՝ տարածվել այլ երկրներում: Հայկ. Ռ. ձևավորվել է XIX դ–ի 2–րդ կեսին (Տ. Չուխաճյան, Գ. Երանյան, Գ. Ղորղանյան): Զարգացմանը նպաստել են Ա. Սպենդիարյանը, Ռ. Մելիքյանը, Դ. Ղազարյանը: Ժանրին անդրադարձել են Կոմիտասը, Կ. Զաքարյանը, Ա. Հարությունյանը, Է. Միրզոյանը, Ս. Բալասանյանը, Է. Բաղդասարյանը, Ա. Մայիլյանը, Ա. Տիգրանյանը և ուր.:

ՌՈՄԱՆՏԻԶՄ (ֆրանս.՝ romantisme – արտասովոր, գեղատեսիլ), գաղ. և գեղ. ուղղություն եվրոպ. և ամերիկ. հոգևոր մշակույթում XVIII դ–ի վերջ–XIX դ–ի 1–ին կեսին: Ռ–ի հետևորդներն անհատի օգտապաշտությանը և շահասիրությանը հակադրել են նրա անսահման ազատության, ինքնակատարելագործման և վերափոխման, անձն. և քաղաքաց. անկախության ձգտումները: Ռ–ի աշխարհընկալման և արվ–ի հիմքում իդեալի և սոցիալ. իրականության տառապալից աններդաշնակությունն էր, անհատի հոգևոր ստեղծագործ. կյանքի հաստատումը, ուժեղ կրքերի պատկերումը:

Գրականության մեջ. Ռ. նախապատրաստել է համաշխ. գրկ–յան մեջ մեծ դեր ունեցած ***ավանգարդիզմն*** ու ***«Գրտի և փոթորիկ»*** շարժումը: Ռոմանտիկները, դժգոհելով իրականությունից, իրենց հայացքն ուղղել են անցյալին, իդեալականացրել ավատատիր. միջնադարը, ստեղծել ազատասեր, ուժեղ, հպարտ հերոսների կերպարներ, որոնք իրենց իդեալը որոնում էին ապագայի մեջ: Արևմտաեվրոպ. և ռուս. գրկ–յան մեջ Ռ–ի խոշորագույն ներկայացուցիչներն էին Նովալիսը, Ժ. Պոլը, Է. Հոֆմանը, Վ. Սքոթը, Ջ. Բայրոնը, Ֆ. Շելլին, Վ. Հյուգոն, Ա. Միցկևիչը, Մ. Յ. Լերմոնտովը, Ֆ. Ի. Տյուտչևը և ուր.: Հայ գրկ–յան մեջ Ռ. առաջացել է ավելի ուշ՝ 1840–ական թթ–ին՝ Խ. Աբովյանի, Դ. Ալիշանի գործերում և արտահայտել է առաջին հերթին հայ ժողդ–ի ազգ–ազատագր. ձգտումները: Հայկ. Ռ. այնուհետև արտահայտվել է Ռ. Պատկանյանի, Ս. Շահազիզի, Մ. Պեշիկթաշլյանի, Պ. Դուրյանի, Ծերենցի, Մուրացանի և ուր. չափածո, արձակ և դրամատիկ. երկերում: Հայ դաս. Ռ–ի բարձրակետը Րաֆֆու սոցիալ., քաղ. և պատմ. վեպերն են:

Երաժշտության մեջ Ռ. ձևավորվել է 1820–ական թթ–ին՝ գր. Ռ–ի ազդեցությամբ, և զարգացել նրան զուգահեռ: Ռ–ին բնորոշ են հետաքրքրությունն անցյալի, բնության, ժող. արվ–ի նկատմամբ: Կարևորվել են երաժշտ. պատկերավորումը, ինչյունագրությունը, նորացվել են արտահայտչամիջոցները, առավել հարստացվել են հարմոնիան և գործիքավորումը, երևան են եկել նոր ժանրեր (սիմֆ. պոեմ, գործիք. բալլադ ևն): Մի շարք երկրներում Ռ., ամբողջ. և ինքնուրույն ուղղություն չլինելով, դրսևորվել է որոշ կոմպոզիտորների երկերում (Ս. Ա. Այլարև, Բ. Սմետանա, Ա. Դվորժակ, Է. Գրիգ, Տ. Չուխաճյան, Ա. Սպենդիարյան և ուր.): Ռ–ի գեղագիտ. սկզբունքներն արտացոլվել են նաև Գ. Ղորղանյանի ռոմաններում, Ա. Տեր–Ղևոնդյանի «Ախթամար» սիմֆ. պոեմում, Ս. Բարխուդարյանի մանրանվագներում և այլ գործերում, կատարող. արվ–ում՝ ջութակահար Գ. Վրույրի, Սինանյանների, դաշնակահար Հ. Տեր–Դավթյանի և ուր. ստեղծագործություններում:

Թատերարվեստում Ռ. ձևավորվել է 1860–ական թթ–ին: Բնորոշ հատկանիշներն են հաս. պաթոսը, բուռն հուզականությունը, դրամատիկ. արտահայտչականությունը ևն: Հայ թատրոնում հերոս. Ռ–ի ավանդույթներով է պայմանավորված Պ. Ադամյանի, Սիրանույշի, Ա. Փափազյանի, Մ. Մնակյանի, Թ. Ֆասուլաճյանի, Ս. Էքշյանի և ուր. արվ–ը:

Հայկ. **կերպարվեստում** Ռ. առավել վառ արտահայտվել է գեղանկարչ. և գրաֆիկ. գործերում, մասամբ՝ քանդ–յան մեջ: Ռոմանտիկ. արվ–ում առանձնանում են Հ. Այվազովսկու, Գ. Բաշինջաղյանի, Ա. Տեր–Մարությանի և ուր. ստեղծագործությունները:

ՌՈՄԱՍ Յակով Դորոֆեևիչ (1902–1969), ռուս. գեղանկարիչ: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1965): ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի անդամ (1958): Հեղինակ է գետերի և ծովերի բնանկարների, բնապատկեր–ժանր. կոմպոզիցիաների («Լաստի վրա», 1947, ևն): Ձևավորել է Նյու Յորքի համաշխ. ցուցահանդեսի ԽՍՀՄ տաղավարը (1939–40), Համամիութ. գղտ. ցուցահանդեսի գլխ. նկարիչ (1950–54): ԽՍՀՄ Պետ. մրց. (1948):

ՌՈՄԵՆ (Romains) Ժյուլ (1885–1972), ֆրանսիացի գրող: Հեղինակ է «Ներբողներ և աղոթքներ» (1913), «Եվրոպա» (1916) և քնար. այլ բանաստեղծությունների, «Բանականությունը պահպանելու համար» (հ. 1–3, 1960–67) փիլ. էսսեների, «Համակրանքներ և հանդիպումներ» (1970) հուշագրությունների ժող–ների, «Բարի կամքի մարդիկ» (հ. 1–27, 1932–46) վեպ–էպոպեայի և այլ գործերի:

ՌՈՄՄԵԼ (Rommel) Էրվին (1891–1944), գերմանացի գեն–ֆլդմ. (1942): ԵՀՊ–ի ժամանակ կռվել է Հս. Աֆրիկայում, 1943–44–ին՝ Իտալիայում և Ֆրանսիայում: Հիտլերի դեմ դավադրության մասնակիցներից (1944): Ինքնասպան է եղել:

ՌՈՄՈԴԱՆՈՎՄԿԻ Ֆեոդոր Յուրևիչ (մոտ 1640–1717), իշխան, ռուս պետ. գործիչ, Պետրոս I–ի զինակիցը և նրա բացակայության ընթացքում երկրի փաստացի կառավարիչը:

ՌՈՅԱԼ (ֆրանս.՝ royal – թագավորական), լար., հարված., ստեղնավոր մուրճիկավոր երաժշտ. գործիք: ***Դաշնամուրի*** հիմն. տեսակը: Ռ–ի լարերը հորիզոն. դիրքով ձգված են թուջե շրջանակի վրա: Լարերի տակ Ռ–ի ինչերեևն է: Մի շարք Ռ–ներ ունեն մոդերատոր, լինում են տարբեր մեծության (ամենափոքրը կոչվում է մինիոն):

ՌՈՅԱԼԹԻ (անգլ.՝ royalty), փոխհատուցում՝ արտոնագրերի, հեղինակ. իրավունքների, բնական պաշարների և սեփականության այլ ձևերի օգտագործման համար, որը տոկոսի ձևով վճարվում է այն վաճառված ապրանքների ու ծառայությունների արժեքից, որոնց արտադր–յան ժամանակ օգտագործվել են այդ արտոնագրերը, հեղինակ. իրավունքները ևն:

ՌՈՅԱԼԻՍՏՆԵՐ (ֆրանս.՝ royal – արքայական, թագավոր.), թագավոր. իշխանության կողմնակիցներ, միապետականներ: Առաջին անգամ «Ռ.» անվանել են Ֆրանս. մեծ հեղ–յան ժամանակ միապետականներին՝ Բուրբոնների կողմնակիցներին:

ՌՈՅԹԵՐ (Reuter) Պաուլ Յուլիուս բարոն ֆոն (Իսրայել Բեր Ռոշաֆատ,1816–1899), հրեա գործարար, լրագրող: 1851–ին Լոնդոնում հիմնադրել և մինչև 1878–ը ղեկավարել է հեռագր. գործակալություն (հետագայում՝ «Ռոյթեր», 2008–ից՝ «Թոմսոն–Ռոյթեր» միավորման կազմում):

ՌՈՆ (Rhône), գետ Շվեյցարիայում և Ֆրանսիայում: Երկ.՝ 812 *կմ*, ավազանը՝ 98 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1780 *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Լեպոնտինյան Ալպերից, հոսում Ժնևի լճով և Ռոնի դաշտավայրով, առաջացնելով դելտա՝ թափվում Միջերկր. ծովի Լիոնի ծոցը: Գործում է ջրէկների կասկադ: Նավարկելի է Էնա գետի գետաբերանից սկսած: Ռ–ի ափին են Ժնև (Շվեյցարիա), Լիոն, Ավինյոն (Ֆրանսիա) ք–ները:

ՌՈՆ, դեպարտամենտ Ֆրանսիայում: Տարածքը՝ 2,7 հզ. *կմ*^{2}, բն.՝ 471 հզ. (2015): Վարչ. կենտրոնը՝ *Լիոն*:

ՌՈՆԱԼԴԻՆՅՈ (Ronaldinho) Գաուշու (իսկական անունը՝ Ռոնալդո դե Ասիս Մորեյրա, ծ. 1980), բրազիլացի ֆուտբոլիստ՝ հարձակվող կիսապաշտպան և հարձակվող: ՈՒԵՖԱ–ի չեմպիոնների լիգայի չեմպիոն (2006)՝ «Բարսելոնա» թիմի կազմում: Եվրոպայի (2005), Աշխարհի (2004, 2005) լավագույն ֆուտբոլիստ: 2017–ին ընտրվել է «Բարսելոնա» ակումբի պաշտոն. դեսպան: «Ոսկե գնդակ» (2005)՝ ՖԻՖԱ–ի վարկածով:

ՌՈՆԱԼԴՈ (Ronaldo) Լուիս Նազարիո դե Լիմա (ծ. 1976), բրազիլացի ֆուտբոլիստ: Աշխարհի (1994, 2002), ՈՒԵՖԱ–ի գավաթի (1998), Գավաթակիրների գավաթի (1997) և մի շարք թիմ. մրց–ներ՝ «Բարսելոնայի» (1996–97), «Ինտերնացիոնալի» (Միլան, 1997–2002), «Ռեալի» (Մադրիդ, 2002–07) կազմում: Հվ. Ամերիկայի կրկնակի չեմպիոն (1994, 2002), 1996–97

և 2002-ին՝ Աշխարհի, 1997 և 2002-ին՝ Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստ:

ՌՈՆԱԼԴՈՒ դուշ Սանտուշ Ավեյրու (Ronaldo dos Santos Aveiro) Կրիշտիանու (ծ. 1985), պորտուգալացի ֆուտբոլիստ: 2009-ից՝ «Ռեալ» (Մադրիդ) թիմի հարձակվող, կիսապաշտպան: Եվրոպայի և Աշխարհի (2008, 2014) լավագույն ֆուտբոլիստ: Եվրոպայի չեմպիոն (2016): Ճանաչվել է պորտուգ. ֆուտբոլի պատմության լավագույն ֆուտբոլիստը, 5 անգամ արժանացել է «Ոսկե գնդակի»:

ՌՈՆԴՈ (իտալ.՝ rondo, ֆրանս.՝ rondeau, < rond – շրջան), 1. երաժշտ. ձև, որը հիմնված է անփոփոխ թեմայի հաջորդականության՝ ռեֆրենի և տարբեր էպիզոդների (թեմայի տարբերակներ) վրա: Ծագել է ժող. պարերգ. երաժշտությունից: Տարբերում են Ռ–ի հնագույն, դաս., հետդաս. տեսակները: Ռ. երբեմն ընդունում է *սոնատային ձևի* հատկանիշներ (ռոնդո-սոնատ):

2. Բանաստեղծության կառուցման ձև: Հենվում է որոշ տողերի կրկնության և ամբողջ բանաստեղծության մեջ միայն 2 հանգի օգտագործման վրա (aabba, abbr, aabbar): Առաջացել է միջնադար. ֆրանս. պոեզիայում: Ռ–ի ձևով գրել է նաև Արշակ *Չոպանյանը* («Փրփուրը»):

ՌՈՆԴՈՆ (Rondon) Կանդիդու Մարիանու դա Սիլվա (1865–1958), բրազիլացի աշխարհագետ, ռազմ. ճարտարագետ, գեն.: 1907–09-ին ղեկավարել է Լա Պլատա և Ամազոն գետերի ջրբաժան հատվածն ուսումնասիրող արշավախումբը: «Հնդկացիների պահպանության ծառայությունը» ստեղծելու (1910) նախաձեռնողներից է:

ՌՈՆԴՈՆԻԱ (Rondônia), նահագ Բրազիլիայի հս-ում: Տարածքը՝ 243 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,56 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ Պորտու Վելյու:

ՌՈՆՍԵՎԱԼ (Roncesvalles), բնակավայր և կիրճ Արմ. Պիրենեյներում (Իսպանիա): Ռ–ի մոտակայքում 778-ի օգոստ. 15-ին բասկերն արաբների դաշնակցությամբ ոչնչացրել են Կառլոս Մեծի հետնապահ ջոկատը: Մարտում զոհվել է Ռոլանդը, որը հետագայում դարձել է ֆրանս. էպոսի հերոսը:

ՌՈՇԱԼ Գրիգորի Լվովիչ (1898–1983), ռուս. կինոռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1967): Նկարահանել է «Սալամանդր» (1928), «Պետերբուրգյան գիշերներ» (1934, Վ. Պ. Ստրոևայի հետ), «Օպենհայմ ընտանիքը» (1939), «Մուսորգսկի» (1950), «Տառապանքի ուղիներով» (1957–59, եռերգություն), «Կյանքն ինչպես տարի» (1966) և այլ ֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950, 1951):

ՌՈՇԵՐ (Roscher) Վիլհելմ Գեորգ Ֆրիդրիխ (1817–1894), գերմանացի տնտեսագետ, քաղաքատնտ-յան պատմ. դպրոցի հիմնադիրը: Ընդունել է միայն հաս-յան զարգացման էվոլյուցիոն ձևերը, տնտ. երևույթները բացատրել է պատմ. նմանության որոնմամբ: Համարել է, որ հաս-յան մեջ եկամուտների անհավասարությունը խթանում է տնտ. առաջընթացը:

ՌՈՇԻ ԽՈՌՈՋ, հավասար գրավիտացիոն պոտենցիալ ունեցող մակերևույթով սահմանափակված խոռոչ՝ ամփոփ (կոմպակտ) կրկնակի աստղ. համակարգում, որը որոշում է նրա բաղադրիչների այն առավել չափերը, որոնցով նրանք դեռևս պահպանում են իրենց կայունությունը: Եթե համակարգի աստղերից մեկն զբաղեցնում է Ռ. խ., ապա նրա նյութը սկսում է հոսել դեպի մյուս աստղը, ինչը կարևոր դեր է խաղում խիտ կրկնակի աստղերի էվոլյուցիայում: Կոչվել է ի պատիվ ֆրանսիացի աստղագետ Է. Ռոշի (1820–1883):

ՌՈՇԵՎԱԿԻ Միխայիլ Պավլովիչ (ծ. 1933), ռուս. ֆիզիոլոգ: ՌԳԱ ակադ. (1990): Աշխ-ները վերաբերում են էվոլյուցիոն և էկոլոգ. ֆիզիոլոգիային, հիմնականում՝ արյան շրջանառության համակարգին: ՌԴ Պետ. մրց. (2003):

ՌՈՇԶԻՆ Անատոլի Ալեքսանդրովիչ (1932–2016), ռուս ըմբշամարտիկ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1963): Օլիմպ. խաղերի (1972), աշխարհի (1963, 1969, 1970), Եվրոպայի (1966), ԽՍՀՄ (1962–71) չեմպիոն՝ հունահռոմ. ըմբշամարտի ծանր քաշ. կարգում:

ՌՈՇՖՈՐ (Rochefort) Վիկտոր Անրի (Ռոշֆոր-Լյուսե, 1831–1913), ֆրանսիացի հրապարակախոս, քաղ. գործիչ: 1868–69-ին՝ «Լապտեր» (ֆրանս.) շաբաթաթերթի, 1869-ին՝ «Մարսելիեզ» (ֆրանս.) օրաթերթի հրտ-խմբ.: Քննադատել է Նապոլեոն III-ին: Չի պաշտպանել 1871-ի Փարիզի կոմունան: 1873-ին աքսորվել է Նոր Կալեդոնիա, 1874-ին փախել Անգլիա: 1880-ին վերադարձել է Ֆրանսիա: Մեծ ժողովրդականություն է վայելել Ռ–ի «Անհաշտելին» (ֆրանս.) թերթը:

ՌՈՉԵՍՏԵՐ (Rochester), ք. ԱՄՆ-ի Նյու Յորք նահագ-ում, նվինգստ Օնտարիո լճի ափին: Բն.՝ 210 հզ. (2012): Լուսա- և տեսասարքավորումների արտադր-յան գլխ. կենտրոն է երկրում: Գործում են համալսարան, տեխնոլոգ. ինստ., լուսանկարչ. թանգարան:

ՌՈՊԵՏ Իվան Պավլովիչ (Պետրով Իվան Նիկոլաևիչ, 1845–1908), ռուս. գարտ.: Ռուս. ոճի հիմնադիրը: Կառույցներում օգտագործել է ռուս. գյուղ. բնակարան. ճարտ-յան մոտիվներ («Վերնատուն», 1873, Աբրամցևո, ևն):

ՌՈՋԵՐՍ (Rogers) Ռիչարդ (ծ. 1933), անգլիացի ճարտ., քաղաքաշինարար: Կառույցներում նկատելի են ֆուտուրիզմի ազդեցությունը (Ժ. Պոմպիդուի անվ. արվ-ի և մշակույթի ազգ. կենտրոն, 1971–77, Ռ. Պիյանոյի հետ, Փարիզ, ևն), էկոլոգ. ճարտ-յան սկզբունքները (Ուելսի Ազգ. ասամբլեայի շենքը, 1998–2005, Կարդիֆ, ևն):

ՌՈՍ (Ross) Ռոնալդ (1857–1932), անգլիացի մակաբուծաբան և բժիշկ: Հաստատել է անոֆելես սեռի մոծակների դերը մալարիայի փոխանցման մեջ: Նոբելյան մրց. (1902):

ՌՈՍԱՍ (Rosas) Խուան Մանուել (1793–1877), Արգենտինայի պետ. գործիչ, գեն. (1828-ից): 1835–52-ին՝ երկրի փաստացի դիկտատոր: Հաստատել է ահաբեկչ. վարչակարգ: Զգտելով իրեն ենթարկել Ուրուգվայը՝ կազմակերպել է Մոնտեվիդեոյի շրջափակումը (1843–51): Ռ–ի վարչակարգը 1852-ի փետր-ին տապալվել է, ինքը փախել է Մեծ Բրիտանիա:

ՌՈՍԱՐԻՈ (Rosario), ք. Արգենտինայում: Բն.՝ 1,24 մլն (2010): Տրանսպորտ. հանգույց է, նվինգստ (տարածաշրջանի գղտ. արտադրանքի արտահանում)՝ Պարանա գետի ափին: Խոշոր արդ., ֆին. և առևտր. կենտրոն է: Գործում է համալսարան: Հիմնադրվել է 1689-ին:

Հայերը Ռ–ում հաստատվել են 1920–30-ական թթ-ին: Ներկայում նրանց թիվը շուրջ 500 է: Մինչև 1990-ական թթ. գործել է Հայ կենտրոնի Ռ–ի վարչ. խորհուրդը, 1990-ական թթ-ից՝ նաև ՀՕՄ-ի մասնաճյուղը:

ՌՈՍԼԻՆ (Roslin) Ալեքսանդր (1718–1793), շվեդ նկարիչ: Դիմանկարներում կերպարի տպավորչականությունն ու պայծառությունը զուգորդել է պատկերման վիրտուոզ վարպետության հետ («Բարոնուհի Նյոյբուրգ-Կրոմիեր», 1756): 1775–77-ին՝ Ռուսաստանում (Կայսրուհի Եկատերինա II-ի դիմանկարը):

ՌՈՍԿԻԼԴ (Roskilde), ք. Դանիայի Զելանդիա կղզում: Բն.՝ 49 հզ. (2010): Եղել է թագավոր. նստավայր: Պատմաճարտ. հուշարձաններից են տաճարը (XII դ., ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է), Գ. Յորգենի եկեղեցին (XI դ.), թագավոր. պալատը (XVIII դ.):

ՌՈՍՈԼԻՄՈ Գրիգորի Իվանովիչ (1860–1928), մանկ. նյարդաբանության հիմնադիրներից Ռուսաստանում: Աշակել է նյարդ. համակարգի կլինիկ. հետազոտությունների մի շարք մեթոդներ, նկարագրել է ախտաբան. մատնային ռեֆլեքսը (կոչվել է իր անունով):

ՌՈՍՍ (Ross), անգլիացի բևեռախույզներ: **Ջոն Ռ.** (1777–1856), Հս-արմ. ծովանցքը որոնող 2 արշավախմբի ղեկ.: 1818-ի արշավախումբը հետազոտել է Գրենլանդիայի արմ. ափը մինչև Սմիթի նեղուցը, 1829–33-ին հայտնաբերել է Քինգ-Ուիլյամի կղզին և Բութիա թ–կղզին: Եղբորորդին՝ **Ջեյմս Քլարկ Ռ.** (1800–1862), 1818–33-ին՝ 6 արշավախմբերի մասնակից: 1830-ին սահնակով անցել է Բութիա թ–կղզին, արմ-ում հայտնաբերել է նեղուց, 1831-ին՝ Երկրի Հս. մագնիս. բևեռը: 1840–43-ին կատարել է 3 արշավ Անտարկտիդա, հայտնագործել է ծով և սառցե արգելք, որոնք կոչվել են իր անունով, Վիկտորիայի Երկիրը, Էրեբուս և Տեռոր հրաբուխները:

ՌՈՍՍԵԼԻՆԻ (Rossellini) Ռոբերտո (1906–1977), իտալացի կինոռեժ.: Նրա «Հռոմը՝ բաց քաղաք» (1945) ֆիլմը եղել է նեոռեալիզմի մանիֆեստը: Այլ կինոնկարներից են՝ «Պայզա» (1946), «Մեր» (1948), «Ֆրանցիսկը՝ Աստծու մենեստրելը» (1950), «Եվրոպա, 51» (1952), «Հնդկաստան, 1958» (1958), «Գեներալ դելլա Ռովերե» (1959), «Հռոմում գիշեր էր» (1960), «Մեսիա» (1975), «Ժորժ Պոմպիդուի անվան կենտրոն» (վավերագր., 1977), նաև հեռուստաֆիլմաշար նշանավոր պատմ. անձանց մասին (1960–70-ական թթ.):

ՌՈՍՍԵԼԻՆՈ (Rossellino), Վաղ Վերածննդի շրջանի իտալացի քանդ-ներ և ճարտ-ներ: **Բեռնարդո Ռ.** (1407-ի և 1410-ի միջև–1464), գլխ. աշխ-ը Պիենցա ք-ի հատակագծումն ու շին-յունն է (1460-ից): Եղբայրը՝ **Անտոնիո Ռ.** (1427–1479), հեղինակ է մոնումենտալ և դեկորատիվ քանդակների (կարդինալ Պորտուգալացու տապանատունը, 1461–66, «Մատտեո Պալմերի», 1468):

ՌՈՍՍԵՏՏԻ (Rossetti) Դանտե Գաբրիել (1828–1882), իտալացի գեղանկարիչ, բանաստեղծ: «Նախառաֆայելականների եղբայրության» (1848) հիմնադիր: Հեղինակ է խորհրդանշ. և գր. սյուժեներով նրբագեղ-դեկորատիվ նկարների («Դանտեի երազը», 1870–71), «Բանաստեղծություններ» (1870), «Բալլադներ և սոնետներ» (1881) ժող-ների:

ՌՈՍՍԻ (Rossi) Էռնեստո (1827–1896), իտալացի դերասան: Իտալ. ռեալիստ. դպրոցի խոշոր ներկայացուցիչ: Խաղացել է

Վ. Ալֆիերիի, Վ. Շեքսպիրի («Համլետ», «Օթելլո», «Մակբեթ») ողբերգություններում: 1890-ին Թիֆլիսում հյուրախաղերի ժամանակ կապեր է հաստատել Գևորգ Չմշկյանի, Հովհաննես Թումանյանի (տպավորվել է Ռ–ի Մակբեթով) և ուր. հայ մտավորականների հետ:

ՌՈՍՍԻ Կառլ Իվանովիչ (1775–1849), ռուս. ճարտ. (ծագումով՝ իտալացի): Ամպիր ոճով ստեղծել է մի շարք մոնումենտալ համալիրներ Ս. Պետերբուրգում՝ Ռուս. թանգարանը (նախկին Միխայլովսկի պալատը, 1919–25)՝ Արվ-ների հրապարակի և Միխայլովսկի փողոցի, Ալեքսանդրյան թատրոնի (1816–34)՝ Օստրովսկու հրապարակի, ճարտ. Ռոսսիի փողոցի և Լոմոնոսովի հրապարակի համալիրները:

ՌՈՍՍԻ ԾՈՎ (Ross Sea), Խաղաղ օվկ-ի ծայրամաս. ծով Անտարկտիդայի ափերին՝ Ադեր և Կոբեկ հրվանդանների միջև: Մակերեսը՝ 440 հզ. *կմ*^{2}, խոր.՝ մինչև 2972 *մ*: Հվ. մասը ծածկված է Ռոսսի ծանծաղուտ. սառցաղաշտով, հս. մասը՝ լողացող սառույցներով: Կոչվել է Ջեյմս Քլարկ *Ռոսսի* անունով:

ՌՈՍՍԻ ՇԵԼՖԱՅԻՆ ՍԱՌՅԱԴԱՇՏ (Ross Shelf Ice), Արմ. Անտարկտիդայում՝ Մերի Բերդ Երկրի և Վիկտորիայի Երկրի միջև: Տարածքը՝ 538 հզ. *կմ*^{2}, սառցի հաստ.՝ մինչև 700 *մ*: Հայտնագործել է Ջեյմս Քլարկ *Ռոսսի* արշավախումբը 1841-ին, որի անունով էլ կոչվել է:

ՌՈՍՍԻՆԻ (Rossini) Ջոակինո (1792–1868), իտալացի կոմպոզիտոր: Նրա ստեղծագործությամբ է պայմանավորված XIX դ-ի սկզբի իտալ. օպերայի ծաղկումը: Գործերին բնորոշ են մեղեդայնությունը, վառ բեմականությունը: Ռ–ի «Սևիլյան սափրիչը» (1816) բուֆֆ-օպերայի գլուխգործոց է: Հեղինակ է նաև «Տանկրեդ», «Իտալուհին Ալժիրում» (երկուսն էլ՝ 1813), «Օթելլո» (1816), «Մոխրոտը», «Գող կաչաղակը» (երկուսն էլ՝ 1817), «Շամիրամ» (1828), «Վիլհելմ Թել» (1829, հերոսառոմանտիկ. օպերայի ցայտուն նմուշներից) օպերաների, «Ստաբատ մատեր» (1842), «Փոքր հանդիսավոր մեսսա» (1864) և այլ գործերի:

«ՌՈՍՏԱՄ ԶԱԼ», հայ ժող. բանավոր ավանդության մեջ իրան. դյուցազնավեպի հայկ. տարբերակը, «Շահնամե» վիպագրության հերոսներից մեկի՝ Զալի որդի Ռոստամի մասին վիպաշարի պատումներ: Հորինվել է «Շահնամե»-ի հենքի վրա, ազդվել է նաև XI–XII դդ-ում կազմված «Բարզունամե» և «Ֆերամորզնամե» պոեմներից: Հայերին հավանաբար փոխանցվել է քրդ. բանավոր ավանդությունից: Դյուցազնավեպի վրա նկատելի է նաև *«Սասնա ծռեր»* էպոսի ազդեցությունը:

ՌՈՍՏԱՆ (Rostand) Էդմոն (1868–1918), ֆրանսիացի բանաստեղծ, դրամատուրգ: Ֆրանսիայի ակադ-ի անդամ (1901): Հեղինակ է «Սուսայի չարաճճիություններ» (1890) բանաստեղծությունների ժող-ի, «Ռոմանտիկները» (բեմ. և հրտ.՝ 1894) կատակերգության, «Հեռավոր իշխանուհին» (բեմ. և հրտ.՝ 1895), «Արծվիկ» (բեմ. և հրտ.՝ 1900), «Սիրանո դը Բերժըրակ» (բեմ.՝ 1897, հրտ.՝ 1898, հայ.՝ 1951) և այլ պիեսների: Հայկ. բեմում բեմադրվել է «Արծվիկ» պիեսը:

ՌՈՍՏԻՍԼԱՎ, Մեծ Մորավական տերության իշխանը՝ 846–870-ին: Պայքարել է գերմ. ագրեսիայի դեմ: 863-ին Բյուզանդիայից հրավիրել է *Կիրիլին և Մեֆոդիին*:

ՌՈՍՏՈԿ (Rostok), ք-նվինզստ Գերմանիայի Մեկլենբուրգ Առաջավոր Պոմերանիա երկրամասում: Բն.՝ 202 հզ. (2010):

ՌՈՍՏՈԿԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Գերմանիայի ինագույն համալսարաններից: Հիմնադրվել է 1419-ին: 2015-ին ուներ ավելի քան 15 հզ. ուսանող:

ՌՈՍՏՈՄԲԵԿՈՎԻ ԺԱՅՌԱՅԻՆ ՄՈՂԵՍ (Darevskia rostombekovi), ***Ռոստոմբեկովի դարևսկիա***, իսկական մողեսների ընտանիքի Դարևսկիա ցեղի մողես: ՀՀ-ում հանդիպում է Գեղարքունիքի և Տավուշի մարզերում: Ապրում է ժայռ. և խիստ քարքարոտ վայրերում, շինությունների պատերի ճեղքերում և այլուր: Կուսածին է: Երկ-յունը տարիքի հետ փոխվում է (2,2–5,6 *սմ*), պոչը կրկնակի երկար է, ինքնահատվող: Սնվում է մանր հոդվածոտանիներով և փափկամարմիններով: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՌՈՍՏՈՄՅԱՆ Ագավնե Վասիլի (1905–1945), ավագ սերժանտ: ԽՄ հերոս (1945, հետմահու): ՀՄՊ-ին մասնակցել է 3-րդ, ապա՝ 1-ին ուկր. ռազմաճակատի զորքերի կազմում: Հերոսի կոչման արժանացել է լեհ. Ժարկի ք–ի ազատագրման ժամանակ ցուցաբերած անձնազոհության համար (կրծքով փակել է թշնամու գնդացրի հրակնատը):

ՌՈՍՏՈՄՅԱՆ Դավիթ Հարությունի (1820–1869), բժիշկ, հաս. գործիչ: Բաքվի ***Մարդասիրական ընկերության*** հիմնադիրներից է (նախագահն ու գանձապահը): Ռ–ի «Տեղագրութիւն Բաքուայ» («Կովկաս», 1847, № 7) աշխ-յան մեջ տեղեկություններ կան Բաքվի նինգ-ի պատմ. անցյալի, կենդ. աշխարհի, բնական հարստությունների, սան. վիճակի մասին: Հեղինակ է «Հասարակաց բժշկականութիւն» (1862) աշխ-յան:

ՌՈՍՏՈՄՅԱՆ Կորյուն Եզեկի (1918–2002), գոտ-յան էլեկտրիֆիկացման բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1967), պրոֆ. (1967): Ստեղծել է անասնապահ. ֆերմաներում աշխատող ավտոմատ փոխադրամիջոցներ, մշակել գոտ-յան բարդ համակարգերի գործառն. դինամիկայի հետազոտման եղանակներ:

ՌՈՍՏՈՄՅԱՆ Ստեփան Արզումանի (ծ. 1956), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2009): ԵՊԿ պրոֆ. (2000): 2000-ից՝ «Երևանյան հեռանկարներ» միջազգ. երաժշտ. փառատոնի հիմնադիր–ղեկ., 2001-02-ին՝ «Քրիստոնյա Հայաստան» և «Համաքրիստոնեական մշակույթ» միջազգ. դաս. և հոգևոր երաժշտության փառատոների գեղ. ղեկ.: Հեղինակ է «Սիւտք» (2002) օպերայի, սիմֆոնիաների (1980–1998), սիմֆ., կամեր. և այլ գործերի, թատրոնի և կինոյի երաժշտության:

«Լեռնարդո դա Վինչի» (2007, Իտալիա), ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի (2016), ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» (2017) շքանշաններ, «Ալբերտ Շվեյցեր» (2005, Գերմանիա), ՀՀ Մ՚Ն ոսկե (2006) մեդալներ:

ՌՈՍՏՈՄՅԱՆ (Ռուստամյան) Վարդգես Արշակի (1908–1984), ավագ սերժանտ: ԽՄ հերոս (1945): ՀՄՊ-ին մասնակցել է 89-րդ Թամանյան հայկ. հրաձգ. դիվիզիայի կազմում: Հերոսի կոչման արժանացել է Սևաստոպոլն ազատագրելիս Գոռնայա բարձունքի գրոհի ժամանակ (1944-ի մայիսի 9) ցուցաբերած խիզախության համար:

ՌՈՍՏՈՊՉԻՆ Ֆեոդոր Վասիլևիչ (1765–1826), ռուս. պետ. գործիչ, հետևակի գեն. (1812): 1812-ի Հայրեն. պատերազմի ժամանակ՝ Մոսկվայի գեն-նահանգապետ:

ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶ, ՌԴ վոմ Հվ. դաշն. օկրուգում: Տարածքը՝ 101 հզ. *կմ*^{2}, բն.՝ 4,2 մլն (2009): Վարչ. կենտրոնը՝ *Դոնի Ռոստով*:

ՌՈՍՏՈՑԿԻ Ստանիսլավ Իոսիֆովիչ (1922–2001), ռուս. կինոռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1974): Նկարահանել է «Դեպքը եղել է Պենկովոյում» (1958), «Կապրենք մինչև երկուշաբթի» (1968), «Իսկ արշալույսներն այստեղ խաղաղ են...» (1972), «Սև ականջ Սպիտակ Բիմը» (1977) և այլ ֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. (1970, 1975), Լենինյան (1980) մրց-ներ:

ՌՈՍՏՐՈՊՈՎԻՉ Սմտիսլավ Լեոպոլդովիչ (1927–2007), ռուս. թավջութակահար, դիրիժոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1966): Գ. Պ. *Վիշնևսկայայի* ամուսինը: Ռ–ի համար գործեր են գրել Դ. Դ. Շոստակովիչը, Դ. Բ. Կաբալևսկին, Ա. Խաչատրյանը, Ա. Շնիտկեն, Ք. Պենդերեցկին, Բ. Բրիտտենը, Ռ. Կ. Շչեդրինը և ուր.: 1977–94-ին ղեկավարել է Վաշինգտոնի սիմֆ. նվագախումբը:

ԽՍՀՄ (1951), Լենինյան (1964), ՌԴ (1995) Պետ. մրց-ներ:

ՌՈՎՆՈ, ք. Ուկրաինայում, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 248,3 հզ. (2010):

ՌՈՎՆՈՅԻ ՄԱՐԶ, վոմ Ուկրաինայի հս արմ-ում: Տարածքը՝ 20,1 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,14 մլն (2014): Վարչ. կենտրոնը՝ *Ռովնո*:

ՌՈՏԱ (Rota) Նինո (1911–1979), իտալացի կոմպոզիտոր: Հեղինակ է օպերաների («Զարմանալի այցելություն», 1970, ևն), բալետների, սիմֆոնիաների, կինոերաժշտության («Ճանապարհ», «Կաբիրիայի գիշերները», «Ռոկկոն և նրա եղբայրները», «Ամարկորդ», «Ռոմեո և Ջուլիետ», «Պատերազմ և խաղաղություն», «Քաղցր կյանք») և այլ գործերի:

ՌՈՏԱԲՈՒ Սոֆիա Միխայլովնա (ծ. 1947), մոլդավ երգչուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1988): Ուկրաինայի հերոս (2002): 1971-ից՝ ամուսնու հետ հիմնադրած «Զերվոնա ռուտա» վոկալ-գործիք. անսամբլի, 1977-ից՝ Ղրիմի ֆիլհարմոնիայի մեներգչուհի: Երգացանկում՝ արդի կոմպոզիտորների գործերից, նաև ժող. երգեր:

ՌՈՏԵՐԴԱՄ (Rotterdam), ք. Նիդեռլանդներում՝ Հռենոսի Նիիվե–Մաասի բազուկի ափերին: Աշխարհի խոշորագույն նվինզստ-ներից է (բեռնաշրջանառությունը՝ 421 մլն *տ* և 10,8 մլն բեռնարկղ, 2008), երկրի առևտրաարդ. կարևոր կենտրոնը: Բն.՝ 586,3 հզ. (2010): Ջրանցքով միացած է Հս. ծովին: Երկթղ. և օդ. ուղիների հանգույց է, Եվրոպայում նավթավերամշակման և նավթաքիմ. արդ-յան առաջատար կենտրոններից: Գործում են բանկեր, համալսարան, արվ-ի ակադ., կոնսերվատորիա, ազգ. ինստ., թանգարաններ, գրադարաններ, ճարտ. հուշարձաններ: Առաջին անգամ հիշատակվել է 1282-ին:

ՌՈՏԻՆՅԱՆ Ալեքսանդր Լևոնի (1913–1991), քիմիկոս: Տեխ. գիտ. դ-ր (1952), պրոֆ. (1961): Լևոն *Ռոտինյանի* որդին: Աշխ-ները վերաբերում են տես. և կիրառ. էլեկտրաքիմ. հարցերին, մասնավորապես՝ էլեկտրող. երևույթների կինետիկայի, իոնների համատեղ լիցքաթափման տեսությանը, ոչ ջր. լուծույթներում ընթացող էլեկտրաքիմ. տեխնոլոգ. շարժընթացների տես. հիմնավորմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949):

ՌՈՏԻՆՅԱՆ Լևոն Ալեքսանդրի (1879–1964), ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դ-ր (1955),

պրոֆ. (1925)։ ՀԽՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ։ Հայաստանում քիմ. բարձրագույն կրթության հիմնադիրներից։ Ալեքսանդր *Ռոտինյանի* հայրը։ Աշխ–ները վերաբերում են քիմ. թերմոդինամիկայի, անիզոտրոպ հեղուկների, քիմ. միացությունների և նրանց ելանյութերի կրիտիկ. ջերմաստիճանների փոխադարձ կապի ուսումնասիրությանը։ Առաջինը և մեծ ճշտությամբ որոշել է (Վ. Սուխովսկու հետ) սնդիկի, ծարիրի, ալյումինի հալոգենիդների կրիտիկ. ջերմաստիճանները։ ՀԽՍՀ հանք. և ոչ հանք. ապարների ուսումնասիրությունները (1922–27) հնարավոր դարձրին ցեմենտի և կարբիդի արտադր–յան կազմակերպումը Հայաստանում։ Ռ–ի (Ստեփան *Ղամբարյանի* հետ) ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ ստեղծվել է ՀԽՍՀ ԳԱ քիմիայի ինստ–ը։

ՌՈՏՄԻՍՏՐ (լեհ.՝ rotmistrz, < գերմ. Rittmeister, Ritt – հեծելազոր. ջոկատ և Meister – հրամ.), սպայական կոչում մի շարք երկրների հեծելազորում։ Համապատասխանել է մյուս զորատեսակների կապիտանի կոչմանը։

ՌՈՏՄԻՍՏՐՈՎ, Պավել Ալեքսեևիչ (1901–1982), խորհրդ. զրահատանկ. զորքերի գլխ. մարշալ (1962)։ ԽՄ հերոս (1965)։ ՀՄՊ–ի ժամանակ՝ տանկ. բրիգադի և կորպուսի հրամ., գվարդ. տանկ. բանակի գլխ. հրամ.։ 1944–45–ին՝ Կարմիր բանակի զրահատանկ. և մեխանիզացված զորքերի գլխ. հրամ–ի տեղակալ։ 1958–64–ին՝ Զրահատանկ. զորքերի ռազմ. ակադ–ի պետ։

ՌՈՏՈՄԵՏՐ, պտտաչափ, գազի կամ հեղուկի ծախսի չափման սարք։ Դեպի վերև լայնացող կոնաձև խողովակ է, որի մեջ տեղադրվում է ցուցիչ գնդիկ–լողանը։ Խողովակում որքան շատ է բարձրանում այն, այնքան մեծ է գազի ծախսը, ըստ որի էլ աստիճանավորվում է խողովակը։

ՌՈՏՈՆԴԱ (իտալ.՝ rotonda – կլոր), կլոր կառույց (տաճար, դամբարան, տաղավար, դահլիճ), որը սովորաբար պսակված է գմբեթով։

ՌՈՏՈՐ (լատ.՝ roto – պտտվել), մեքենաների պտտվող դետալ, որը սովորաբար տեղադրվում է *պտպտորի* ներսում, օր.՝ էլեկտրաշարժիչներում, տուրբիններում ևն։

ՌՈՏՈՐԱՅԻՆ ՇԱՐԺԻՉ, նաշ, որում գազերի այրման էներգիան մեխ–ի վերածվում է պտտ. կամ պտտ–համընթաց շարժվող *ռոտորով*։ Ըստ գործողության սկզբունքի՝ ծավալ. տիպի մեքենա է, ռոտորի արտաքին և իրանի ներքին մակերևույթներն առաջացնում են այրման խցեր, որոնց ծավալները պարբերաբար փոփոխվում են ռոտորի պտույտի ընթացքում, այսինքն՝ կրկնվում են բանող մարմնի սեղմման և ընդարձակման ցիկլերը։

ՌՈՍ–ՊԱԼՄՅԱՆ, **Ռոտպածյան**, գվո Մեծ Հայքի Ուտիք նահանգ–ում՝ Ուտիքի արլ–ում՝ Երասխի ձախափնյա տարածքում։ Հիշատակվում է VII դ–ի «Աշխարհացոյց»–ում։

ՌՈՐԱՅՄԱ, (Roraima), նահանգ Բրազիլիայի հս–ում։ Տարածքը՝ 225 հզ. *կմ*², բն.՝ 450 հզ. (2015)։ Վարչ. կենտրոնը՝ Բոա Վիստա։

ՌՈՐԵՐ (Rohrer) Հենրիխ (1933–2013), շվեյցարացի ֆիզիկոս։ Աշխ–ները վերաբերում են պինդ մարմնի ֆիզիկային։ Տեսածրող թունելային մանրադիտակի ստեղծողներից է։

Նոբելյան մրց. (1986, Գ. Բիննիգի հետ)։

ՌՈՐԹԻ (Rorty) Ռիչարդ (1931–2007), ամերիկացի փիլ.։ Սկսակել է *պրագմատիզմի* հետմոդեռնիստ. տարբերակ։ Հեղինակ է «Փիլիսոփայությունը և բնության հայելին» (1979), «Պատահականություն, հեգնանք և համերաշխություն» (1989) և այլ աշխ–ների։

ՌՈՐՇԱԽ (Rohrschach) Հերման (1884–1922), շվեյցարացի հոգեբույժ և հոգեբան։ Ստեղծել է (1921) հոգեախտորոշման թեստ (Ռ–ի թեստ)՝ անձի հետազոտման համար։

ՌՈՈՒԶ (Rose) Իրվին (1926–2015), հրեա կենսաքիմիկոս։ 1939–ից՝ ԱՄՆ–ում։ Աշխ–ները վերաբերում են սպիտակուցների ներբջջ. այլասերմանը՝ ուրիկվիտին պոլիպեպտիդի մասնակցությամբ։ Նոբելյան մրց. (2004, Ա. Հերշկոյի և Ա. Ցիխանովերի հետ)։

ՌՈՈՒԼԱՆԴ (Rowland) Հենրի (1848–1901), ամերիկացի ֆիզիկոս։ Յույց է տվել (1876), որ շարժվող հաղորդիչում ազատ լիցքերի կոնվեկտիվ հոսանքն իր մագնիս. ազդեցությամբ նույնական է անշարժ հաղորդիչում հաղորդականության հոսանքի հետ (Ռ–ի փորձ), որը կարևոր դեր է խաղացել շարժվող միջավայրերում Մաքսվելի հավասարումների հաստատման համար։

ՌՈՈՒԼԻՆԳ (Rowling) Ջոան Քեթլին (կեղծանունը՝ Ջ. Ք. Ռուլինգ, ծ. 1965), բրիտանացի կին գրող, սցենարիստ։ Հեղինակ է պատանի հրաշագործ Հարրի Փոթերի մասին վիպաշարի (հ. 1–7, 1997–2007, հայ.՝ հ. 1–2, 2016), «Պատահական թափուր պաշտոն» (Ռոբերտ Գելբրեյթ կեղծանունով, 2012) ողբակատակերգության, «Կկվի կանչը» (2013), «Շերամ» (2014), «Ծառայություն չարի մոտ» (2015) քր. թեմայով վեպերի։

ՌՈՈՒԼԻՆՍՈՆ (Rawlinson) Հենրի Քրեսվիկ (1810–1895), անգլիացի արևելագետ, դիվանագետ։ Ասորագիտ–յան հիմնադիրներից։ Մեծ ներդրում է ունեցել հին պարսկ. և ասորա–բաբել. սեպագիր արձանագրությունների վերծանման գործում։ Վերծանել է *Բեհիստունյան արձանագրությունը*։

ՌՈՈՒՉ (Roche) Քևին (ծ. 1922), ամերիկացի ճարտ. (ծագումով՝ իռլանդացի)։ Կառույցներն աչքի են ընկնում պլաստիկ ձևերով (Հրեական ժառանգության թանգարան, 1997, Նյու Յորք), բրուտալիզմի և ուշ մոդեռնիզմի տարրերի համադրությամբ, լանդշաֆտի հետ ներդաշնակությամբ («Bouygues» ընկ–յան համալիր, 1988, Փարիզի մոտակայքում) ևն։

ՌՈՈՒՍ (Rayc, Rous) Ֆրենսիս Պեյրոն (1879–1970), ամերիկացի ախտաբան և ուռուցքաբան։ Հայտնաբերել է առաջին քաղցկեղածին վիրուսը (կոչվել է իր անունով), որն առաջացնում է հավերի սարկոմա։ Հետազոտել է ուռուցքների պատճառագիտ–յան և ախտածնության մեջ վիրուսների ու քաղցկեղածին նյութերի դերը։ Նոբելյան մրց. (1966)։

ՌՈՈՒԿԵԼԱ, **Ռուրկելա**, ք. Հնդկաստանի Օրիսա նահանգ–ում՝ Բրահմանի գետի ափին։ Բն.՝ 210 հզ. (արվարձաններով՝ 536 հզ., 2011)։

ՌՈՔ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (անգլ.՝ rock music, < rock – ճոճվել, պտտվել), ուղղություն *փոփ* երաժշտության մեջ։ Ծագել է 1950–ական թթ–ին նեգր. քաղաք. բանահյուսության վոկալ–պար. ժանրերից՝ «ռիթմ էնդ բլյուզից» և *ռոք–ն–ռոլլից*։ Առավել տարածվել է *«Բիթլզ»* և «Ռոլլինգ Սթոունս» ռոք խմբերի (1960–ական թթ.) շնորհիվ։ Բնորոշ են ընդգծված ռիթմը, էլեկտրոն. երաժշտության գործիք. կազմը։ Ժամանակակից Ռ. ե. միավորում է տարբեր երկրներում տարածված երաժշտ. ուղղություններ՝ իրենց առանձնահատկություններով։ Հայկ. ռոք խմբերից են՝ «Առաքյալներ», «Ասպարեզ», «Այաս», «Սաքսիմում», «Բամբիռ», «Էմփիրեյ», «Դորիանս», «The Beautified Project» ևն, համաշխ. ճանաչում ունի հայ–ամերիկյան «System of A Down» ռոք խումբը։

ՌՈՔ ՕՊԵՐԱ, երաժշտադրամատիկ. ստեղծագործություն, հիմքում՝ *ռոք երաժշտություն*։ Ծագել է 1950–ական թթ–ին ԱՄՆ–ում։ Ճանաչված են Է. Լլոյդ Ուեբերի «Հիսուս Քրիստոսը՝ գերաստղ» (1971), «Փինք Ֆլոյդ» խմբի «Պատը» (1979), Ա. Սուքիասյանի «Վերջ» (2004), Ա. Սաթյանի «Լիլիթ» (1997), Ա. Գրադսկու «Վարպետն ու Մարգարիտան» (2009) և այլ գործեր։

ՌՈՔ–Ն–ՌՈԼԼ, ռոք էնդ ռոլլ (անգլ.՝ rock'n'roll, rock and roll – ճոճվիր և պտտվիր), փոփ երաժշտության ոճ։ Արդի *ռոք երաժշտության* հիմքերից։ Առաջացել է 1950–ական թթ–ին ԱՄՆ–ում՝ քանթրիի և «ռիթմ էնդ բլյուզի» համադրմամբ։ Ազդել է վոկալ–պար. երաժշտության վրա։ Առաջատարը՝ Է. *Պրեսլի*։ 1970–ական թթ–ին մի շարք երաժշտ. խմբեր անդրադարձել են Ռ–ն–ռ–ին։

ՌՈՔՎԵԼԻ ՄԵԹՈԴ, նյութերի (հիմնականում՝ մետաղների) կարծրության որոշումը՝ փորձարկվող նյութի մեջ ալմաստե կոնի (A և C սանդղակներ՝ բեռնվածքներին համապատասխան) կամ կոփված պողպատե գնդի (B սանդղակ) ներճնշումով։ Կարծրությունը ցույց է տրվում HR (Hardness Rockwell– կարծրությունը՝ ըստ Ռոքվելի) նշանով՝ սանդղակի տեսակի հավելումով՝ HRA, HRB, HRC։ Կոչվել է ամերիկացի մետաղագործ Ս. Պ. Ռոքվելի (1886–1940) պատվին։

ՌՈՍԱԿԵՍ, XIV դ–ի 2–րդ կեսի մանրանկարիչ, գրիչ։ 1397–ին Խիզանում Ռ–ի ընդօրինակած և նկարազարդած Ավետարանը (Մնդ., ձեռ. № 7629) ունի 20 տերուն., 4 ավետարանիչների պատկերներ, 10 խորան։ Ռ–ի պատկերագրությունը բացառիկ ինքնատիպ է՝ շեղված պատկերման կանոն. ձևերից։

ՌՈՒ (Roux) Էմիլ (1853–1933), ֆրանսիացի մանրէաբան։ ԽՍՀՄ ԳԱ արտ. պատվ. անդամ (1925)։ Աշխ–ները վերաբերում են իմունաբանության և շճաբանության խնդիրներին։ Լ. Պաստյորի ղեկավարությամբ հետազոտել է *կատաղությունը*։ Ա. Յ. Իերսենի հետ անջատել է դիֆթերիայի տոքսինը և հետազոտել նրա ազդեցությունը։ Է. Ա. Բերինգից (Գերմանիա) անկախ մշակել է հակադիֆթերիային հակատոքսիկ շիճուկը։

ՌՈՒ Ժակ (1752–1794), Ֆրանս. մեծ հեղ–յան գործիչ, «կատաղիներ»–ի ղեկ–ներից։ 1792–ին ընտրվել է Փարիզի կոմունա–յի անդամ։ Ժիրոնդիստների անհաշտ թշնամի էր. մասնակցել է 1793–ի մայիսի 31–հունիսի 2–ի ապստամբությանը, որը հանգեցրել է Յակոբինյան *դիկտատուրա–յի* հաստատմանը։ Յակոբինյան կառ–յան դեմ ելույթի համար երկու անգամ ձերբակալվել է, բանտում ինքնասպան է եղել։

ՌՈՒԱՆ (Rouen), ք–նվ–նգստ Ֆրանսիա–յում, Ծովամերձ Սենա դեպարտամենտի վարչ. կենտրոնը։ Բն.՝ 115,6 հզ. (2010)։ X–XIII դդ–ում՝ Նորմանդիա դքսության մայրաքաղաքը։ Ճարտ. հուշարձաններից

են Նոտր Դամ գոթ. տաճարը (1210–XVI դ–ի սկիզբ), Սեն Սակլու եկեղեցին (XV դ.):

ՌՈՒԱՆԴԱ (ինքնանվանումը՝ բանիա-ռուանդա), բանտու ժողդ–ների խումբ, Ռուանդայի հիմն. բնակչությունը: Բաժանվում են հուտու (8,3 մլն, 2010), թութսի (960 հզ.), պիգմեյների տվա (180 հզ.) խմբերի: Ապրում են նաև Ուգանդայում (960 հզ.), Կոնգոյի ԺՀ–ում (600 հզ.) և այլ երկրներում: Լեզուն՝ ռուանդա: Հավատացյալները հիմնականում կաթոլիկ են, մի մասը՝ ավանդ. հավատալիքների հետևորդ:

ՌՈՒԱՆԴԱ (Rwanda), **Ռուանդայի Հանրապետություն** (Republika y'u Rwanda, République du Rwanda), պետություն Արլ. Աֆրիկայում: Սահմանակից է Ուգանդային, Տանզանիային, Բուրունդիին, Կոնգոյի ԺՀ–ին: Տարածքը՝ 26,4 հզ. *կմ*², բն.՝ 10 մլն (2012): Մայրաքաղաքը՝ *Կիգալի* (ունի պրովինցիայի կարգավիճակ): Պետ. լեզուները՝ ֆրանս., անգլ. և կինյառուանդա: Կառավարման ձևը՝ խառը հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը: Բաժանված է 5 վարչ. պրովինցիաների: Հավատացյալների մեծ մասը քրիստոնյա (կաթոլիկ և բողոքական) է, կան նաև ավանդ. հավատալիքների հետևորդներ: Անդամակցում է ՄԱԿ–ին, Աֆրիկ. միությանը, ԱռտՀԿ–ին և ին: Աշխարհի հետամնաց երկրներից է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով շուրջ 1 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է սուրճ, թեյ, կաշվե հումք ևն, ներմուծում նավթ, մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ ռուանդ. ֆրանկ:

Ռ–ի տարածքում կենտրոնացված պետության ստեղծումն ավարտվել է XIX դ–ի վերջին: 1890–ական թթ–ին Ռ. են թափանցել գերմ. գաղութարարները, որոնք 1898–ին հիմնել են գերմ. ռեզիդենտություն և այն մտցրել Գերմ. Արլ. Աֆրիկայի կազմի մեջ: 1916–ին Բելգիան զավթել է Ռ.: ԱՀՊ–ում Գերմանիայի պարտությունից հետո Ռ. հարևան Բուրունդիի հետ դարձել է Ռուանդա–Ուրունդի բելգ. մանդատ. տարածքի մաս: 1946–ին ՄԱԿ–ը Ռուանդա–Ուրունդին հայտարարել է հովանավորյալ տարածք՝ Բելգիայի կառավարման ներքո: ԵՀՊ–ից հետո Աֆրիկայում ազգ–ազատագր. շարժման վերելքն ընդգրկել է նաև Ռ.: 1961–ին վերացվել է միապետությունը, և Ռ. հռչակվել է հանրապետություն, իսկ 1962–ին ՄԱԿ–ի որոշմամբ վերացվել է բելգ. հովանավորությունը, և Ռ. հռչակվել է անկախ պետություն: Անկախության առաջին տարիներին (1963–65) Ռ–ում սրվել են հարաբերությունները հուտու–ների և թութսիների միջև, տեղի են ունեցել արյունահեղ ընդհարումներ: 1973–ին Ռ–ում պետ. հեղաշրջումով արգելվել են քաղ. կուս–յունները: 1990–ին սկսվել են վարչակարգի ժողովրդավարացման գործընթացներ, ներդրվել է բազմակուս. համակարգ: 1990–2005–ին Ռ–ում հուտու և թութսի ժողդ–ների միջև տեղի են ունեցել նոր զինված բախումներ: 1994–ին ծայրահեղ. հուտուների ռազմականացված խմբավորումներն իշխանությունների ցուցումով կոտորել են ավելի քան 500 հզ. թութսիների և քաղ. ընդդիմադիրների: Այդ կոտորածները (1994–ի ապրիլի 6–ից հուլիսի 16–ը) որակվել են որպես ռուանդ. ցեղասպանություն և ճանաչվել միջազգայնորեն: 2005–ին հուտուների առաջնորդները դատապարտել են ցեղասպանության քաղ–յունը: 2010–ին Ռ–ում տեղի են ունեցել համապետ. ընտրություններ, նախագահ է վերընտրվել Պ. Կագամեն: 2015–ին երկրում իրականացվել են սահմանադր. բարեփոխումներ:

ՌՈՒԱՆԴԱ ԼԵԶՈՒ, Ռուանդայի պետ. լեզուներից: Պատկանում է բենուե–կոնգոլեզյան լեզվաընտանիքի բանտու խմբին: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՌՈՒԱՊԵՀՈՒ (Ruapehu), գործող հրաբուխ Նոր Զելանդիայում, նրա ամենաբարձր գագաթը: Բարձր.՝ 2796 *մ*: Վերջին անգամ ժայթքել է 2007–ին:

ՌՈՒԲ ԷԼ–ԽԱԼԻ, ավազ. անապատ Արաբ. թ–կղզու հվ–արլ–ում՝ տեկտ. իջվածքում: Տարածքը՝ 600 հզ. *կմ*² (երկրագնդի խոշոր անապատներից է): Երկ.՝ մոտ 1200 *կմ*, լայն.՝ մոտ 500 *կմ*: Մակերևույթը հարթավայր. է: Բարձր. արլ–ում՝ 100–200 *մ*, արմ–ում՝ 500–1000 *մ*: Տարածքի մոտ 80 %–ը ծածկված է շարժուն ավազներով: Ծայրամասերում կան հազվադեպ օազիսներ: Բնակիչները գլխավորապես արաբներ են, զբաղվում են քոչվոր. անասնապահությամբ և ուղտաբուծությամբ: Կան նավթահանքեր:

ՌՈՒԲԱՅԻ (արաբ. – բառացի՝ քառապատկված), բանաստեղծ. քառյակի տեսակ արլ. և աշուղ. քնարերգության մեջ: Տողերի վերջում կրկնվող բառը կամ բառախումբը կոչվում է ռեդիֆ, Ռ–ների շարքը՝ ռուբայաթ: Աշուղ. Ռ. ունի երաժշտ. հատուկ եղանակ և ընդգրկված է որոշ աշուղ. բարդ երգատեսակների մեջ (ռուբայի–դիվանի, ռուբայի–բայաթի–թասլիք. վերջինիս միակ օրինակը ստեղծել է Սայաթ–Նովան): Հայ բանաստեղծներից Ռ–ներ է գրել Ե. Չարենցը:

ՌՈՒԲԵՆ, **Ռայմունդ** (մոտ 1195–1220), Անտիոքի դքսության (1197/98–ից) և Կիլիկիայի հայկ. թագավորության գահաժառանգ իշխան: Անտիոքի դքսության գահին Ռ–ի հաստատմանը խանգարել են Հալեպի ամիրությունը, Իկոնիայի սուլթանությունը, քանիցս գահը հափշտակել է Տրիպոլսի դուքսը: Ռ–ին 1219–ին տապալել են Անտիոքի խաչակիրները: *Լևոն Բ* նրան զրկել է Հայոց գահաժառանգի իրավունքից՝ այն վերապահել իր մանկահասակ դուստր *Զաբելին*: Լևոն Բ–ի մահից հետո Սսիսում ապաստանած Ռ. փորձել է գրավել Հայոց գահը, սակայն Կոստանդին սպարապետը նրան ձերբակալել է և նետել Տարսոնի բանտը, որտեղ էլ շուտով մահացել է:

ՌՈՒԲԵՆ Ա. (1025–1095), Կիլիկիայի հայոց իշխան՝ 1080–ից: Ռուբինյանների (իշխան. և թագավոր. տոհմ՝ 1080–1219–ին) իշխանապետության հիմնադիրը: Եղել է *Գագիկ Բ*–ի թիկնապահ իշխան: Գագիկ Բ–ի մահից հետո Ռ. Ա. ամրացել է Բարձրբերդ, Կոպիտառ և Կոռոմոզոլ բերդերում, շրջակա հայերի աջակցությամբ ապստամբել Բյուզ. կայսրության դեմ. 1080–ին թոթափել է նրա գերիշխանությունը և Լեռն. Կիլիկիայում հիմնադրել կայուն ու անկախ իշխանապետություն:

ՌՈՒԲԵՆ Բ (ծ. թ. անհտ–1169), Կիլիկիայի հայոց իշխան՝ 1169–ին՝ Ռուբինյանների տոհմից: Հաջորդել է հորը՝ *Թորոս Բ*–ին: Ռ. Բ–ի անչափահասության պատճառով երկիրը կառավարել է Թովմա պայլը: Սակայն նույն թվականին գահը բռնագրավել է Թորոս Բ–ի եղբայր *Մլեհը*: Թովմա պայլը Ռ. Բ–ին փախցրել է Հռոմկլա, որտեղ շուտով մահացել է (հավանաբար սպանվել է):

ՌՈՒԲԵՆ Գ (1145–1187), Կիլիկիայի հայոց իշխանապետ՝ 1175–ից՝ Ռուբինյանների տոհմից: Գահ է բարձրացել հորեղբոր՝ *Մլեհի* սպանությունից հետո: Բյուզանդիայից ազատագրել է Ադանա և Մսիս ք–ները, վերացրել կայսրության վերջին հենակետերը Դաշտ. Կիլիկիայում, բյուզ. տարրերից մաքրել կիլիկյան ծովեզերքը: 1185–ին Անտիոքի դուքս Բոհեմունդը Ռ. Գ–ին ձերբակալել է և իր զորքով ներխուժել Դաշտ. Կիլիկիա, սակայն անհաջող: 1187–ին եղբայրը՝ Լևոնը, փրկագնել է Ռ. Գ–ին, բայց նա գահը կամովին հանձնել է նրան՝ *Լևոն Բ*–ին, ինքը դարձել կրոնավոր:

ՌՈՒԲԵՆՍ (Rubens) Պիտեր Պաուլ (1577–1640), ֆլամանդացի գեղանկարիչ: Հեղինակ է կրոն. և դից. թեմաներով («Խաչից իջեցնելը», մոտ 1611–14, «Պերսևս և Անդրոմեդա», մոտ 1620–21), պատմ–այլաբան. կտավների («Մարիա Մեդիչիի պատմությունը», շարք, մոտ 1622–25), բնանկարների և գյուղ. տեսարանների («Հնձվորների վերադարձը», մոտ 1635–40), դիմանկարների («Սենեկապանուհին», մոտ 1625): Ռ–ի գեղանկարչությանը հատուկ են հստակ, ազատ ձևերը, արտահայտիչ, պլաստիկ. ծեփակերտվածքը, գունեղանգի նուրբ աստիճանավորությունը: Ռ–ի արվեստանոցում աշխատել են Ա. Վան Դեյքը, Յ. Յորդանսը, Ֆ. Մնայդերսը: Ռ–ի «Միլենոսի երթը» նկարը ՀԱՊ–ում է:

ՌՈՒԲԻԱ (Rubbia) Կառլո (ծ. 1934), իտալացի ֆիզիկոս: ՌԳԱ արտ. անդամ (1988): Ղեկավարել է թույլ փոխազդեցությունների փոխանցիչ միջանկյալ վեկտոր. բոզոնները (W± և Z⁰) և t–քվարկները հայտնաբերած փորձարար. խումբը: Նոբելյան մրց. (1984, Ս. *Վան դեր Մերի* հետ):

ՌՈՒԲԻԴԻՈՒՄ (Rubidium), Rb, տարրերի պարբեր. համակարգի I խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 37, ա. զ.՝ 85,4678, ալկալիական մետաղ է: Անվանումը՝ լատ. rubidus – մուգ կարմիր բառից (հայտնաբերվել է սպեկտրի կարմիր տիրույթում): Ռ. սպիտակ, արծաթափայլ, փափուկ մետաղ է, կտրվում է դանակով, պարամագնիս. է., խտ.՝ 1,532 *գ/սմ*³, $t_{հալ.}$՝ 39,5°C: Օդում արագ բոցավառվում է, ջրի հետ փոխազդում է պայթյունով: Բնության մեջ ցրված է, ուղեկցում է կալիում և լիթիում մետաղներին, ստացվում է դրանց միներալներից: Կիրառությունը սահմանափակ է:

ՌՈՒԲԻԿՈՆ (լատ.՝ Rubico, իտալ.՝ Rubicone), գետ Ապենինյան թ–կղզում: Ռիմինի ք–ից հս թափվում է Ադրիատիկ ծովը: Մինչև մ. թ. ա. 42–ը սահման էր Իտալիայի և Այսրալպ. Գալլիա պրովինցիայի միջև: Մ. թ. ա. 49–ի հունվ. 10–ին Հուլիոս *Կեսարը*, հակառակ օրենքի (որպես պրոկոնսուլ՝ նա զորք առաջնորդելու իրավունք ուներ միայն Իտալիայի սահմաններից դուրս), մեկ լեգեոնով անցել է Ռ.՝ ասելով. «Վիճակը նետված է» («Alea jacta est»), մտել Իտալիա և սկսել քաղաքաց. պատերազմ (մ. թ. ա. 49–45): Այստեղից՝ «Ռուբիկոնն անցնել» թևավոր արտահայտությունը, որը նշանակում է վճռական, կարևոր, անդարձ որոշում կայացնել:

ՌՈՒԲԻՆԻ (Rubini) Ջովաննի Բատիստա (1794–1854), իտալացի երգիչ (տենոր): Ջ. Ռոսսինիի, Գ. Դոնիցետտիի, Վ. Բելլինիի օպերաներում հերոս. դերերգերի (մի քանիսը՝ հատուկ Ռ–ի համար) լա–

վագույն մեկնաբաններից: Հեղինակ է քնար. երգերի, «Տենորի և սոպրանոյի ժամանակակից երգեցողության 12 դաս» մեթոդ. ձեռնարկի:

ՌՈՒԲԻՆՅԱՆՆԵՐ, հայ իշխան. և թագավոր. տոհմ Կիլիկյան Հայաստանում՝ 1080–1219-ին: Նահապետն ու անվանադիրը Մեծ իշխան *Ռուբեն Ա*-ն է: Առավել հայտնի են *Թորոս Ա*-ն, *Լևոն Ա*-ն, *Ռուբեն Բ*-ն, *Սիևհր* և ուր.: Մինչև 1198-ը կառավարել են որպես իշխաններ: 1198-ին *Լևոն Բ* Մեծագործը, օծվելով թագավոր, Հայոց իշխանապետությունը հռչակել է Հայոց թագավորություն: Լևոն Բ-ի մահով սպառվել է Ռ-ի տոհմն արական գծով: Գահը ժառանգել է նրա դուստր *Զաբելը*:

ՌՈՒԲԻՆՇՏԵՅՆ (Rubinstein) Անտոն Գրիգորևիչ (1829–1894), հրեա դաշնակահար, կոմպոզիտոր, դիրիժոր, հաս. գործիչ: Ն. Գ. *Ռուբինշտեյնի* եղբայրը: Ռուս. երաժշտ. ընկ-յան (1859) և Ռուսաստանում առաջին կոնսերվատորիայի (1862, Ս. Պետերբուրգ), նաև ռուս. դաշնամուր. կատարող. դպրոցի հիմնադիրը: Հեղինակ է օպերաների («Դևը», 1871, «Ներոն», 1876, ևն), օրատորիաների, սիմֆոնիաների, ծրագր-սիմֆ., դաշնամուր. և այլ գործերի, ռոմանսների («Գիշերը» և «Պարսկական երգեր» շարքեր), աշխ-ների:

ՌՈՒԲԻՆՇՏԵՅՆ Արթուր (1887–1982), հրեա դաշնակահար: Նվագացանկում՝ Ֆ. Շոպենի, Ֆ. Լիստի, Յ. Բրամսի և ուր. գործերից: Հեղինակ է դաշնամուր. պիեսների, «Իմ պատանեկության օրերը» (1973) հուշագրության:

ՌՈՒԲԻՆՇՏԵՅՆ Նիկոլայ Գրիգորևիչ (1835–1881), հրեա դաշնակահար, դիրիժոր, հաս. գործիչ: Ա. Գ. *Ռուբինշտեյնի* եղբայրը: Ռուս. երաժշտ. ընկ-յան Մոսկվայի բաժանմունքի (1860) և Մոսկվայի կոնսերվատորիայի (1866) հիմնադիրը: Հեղինակ է նվագախմբային նախերգանքների, դաշնամուր. պիեսների, ռոմանսների:

ՌՈՒԲԼԻ, Ռուսաստանի, ԽՍՀՄ-ի, մի շարք այլ երկրների դրամ. միավորը (հավասար է 100 կոպեկի): «Ռ.» հասկացությունն առաջացել է XIII դ-ում Նովգորոդում՝ գրիվնայի (մոտ 200 *գ* զանգվածով արծաթե ձուլվածքի) անվանման համար: XV դ-ի կեսից դադարել է ձուլվածք լինելուց և մնացել որպես հաշվարկ. հասկացություն դրամ. շրջանառության ոլորտում: Որպես մետաղադրամ թողարկվել է 1654-ին: Խորհրդ. առաջին Ռ. շրջանառության մեջ է դրվել 1919-ին՝ որպես վարկային տոմս: 1924-ին հատվել է ԽՍՀՄ արծաթե Ռ. (այնուհետև շրջանառվել է միայն թղթադրամի տեսքով): 1961-ից Ռ. հատվել է պղինձ-նիկել. համաձուլվածքից: 1992-ին Ռուսաստանի բանկը թողարկել է նոր Ռ.՝ դրամի և բանկ. տոմսերի ձևով:

ՌՈՒԲԼՅՈՎ Անդրեյ (1370-ից ոչ ուշ–մոտ 1430), ռուս գեղանկարիչ: Մոսկվայի գեղանկարչության դպրոցի հիմնադիրը: 1405-ին նկարազարդել է Մոսկվայի (Թեոփանես Հույնի և Պրոխոր Գորոդեցցու հետ) Կրեմլի Ավետման տաճարը (որմնանկարները չեն պահպանվել): 1425 և 1428-ի միջև նկարազարդել է (Դանիել Չյոռնիի հետ) Երրորդություն եկեղեցին համանուն մենաստանում (որմնանկարները չեն պահպանվել): Անդրոնիկի մենաստան վերադառնալուց հետո նկարազարդել է Փրկչի եկեղեցին (պահպանվել են հատվածներ): Ստույգ պահպանվել են Վլադիմիրի Վերափոխման տաճարի որմնանկարները (Դանիել Չյոռնիի հետ, 1408), Երրորդություն–Սերգիի մայրավանքի Երրորդության տաճարի պատկերակալի «Երրորդություն» սրբապատկերը (մոտ 1410 կամ 1425/28):

ՌՈՒԲՆԵՐ (Rubner) Մաքս (1854–1932), գերմանացի ֆիզիոլոգ և հիգիենիստ: Աշխ-ները վերաբերում են նյութափոխանակության ֆիզիոլոգիային, հիգիենային: Ապացուցել է կենդանի օրգանիզմում էներգիայի պահպանման օրենքի կիրառելիությունը:

ՌՈՒԲՈ (Roubaud) Ֆրանց Ալեքսեևիչ (1856–1928), ռուս. գեղանկարիչ-մարտանկարիչ (ծագումով՝ ֆրանսիացի): Փաստագր. ճշտությամբ ստեղծել է հսկայական չափերի մարտանկար-համայնապատկերներ («Սևաստոպոլի պաշտպանությունը», 1902–04, «Բորոդինոյի ճակատամարտը», 1911): Հեղինակ է նաև «Երևանի բերդի գրավումը» (1827) և այլ նկարների:

ՌՈՒԲՐՈՒՔ, **Ռուբրուքվիս** (Rubrouck, Roebroeck), Վիլյեմ (1215/20-ի միջև–1293), ֆլամանդացի ճանապարհորդ, ուղեգրող: Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս IX Սրբազանի բանակում մասնակցել է խաչակրաց 7-րդ արշավանքին (1248–54), Լյուդովիկոս IX-ի հանձնարարությամբ 1253-ին ուղևորվել է Մոնղոլիայի մայրաքաղաք Կարակորում, ճանապարհին արժեքավոր տեղեկություններ հավաքել և նոթագրել (լատ.) Արևելքի երկրների (հատկապես՝ Միջին Ասիայի, Հվ. Ռուսաստանի, Հայաստանի) աշխարհագրության, ազգագրության և պատմության վերաբերյալ: Ռ-ի երկը բազմիցս հրատարակվել է տարբեր լեզուներով: Հայ. են թարգմանվել Հայաստանին վերաբերող առանձին հատվածներ:

ՌՈՒԲՑՈՎԱ Օլգա Նիկոլաևնա (1909–1994), ռուս շախմատիստուհի: Միջազգ. գրոսմայստեր (1976), ԽՍՀՄ ս. վ. վ. (1952): Աշխարհի (1956–58), ԽՍՀՄ (1927, 1931, 1935, 1937, 1949) չեմպիոն:

ՌՈՒԴԱՔԻ Աբու Աբդալլահ Ջաֆար (մոտ 860–941), պարսիկ բանաստեղծ: Ֆարսի լեզվով պոեզիայի հիմնադիրը: 40 տարուց ավելի եղել է Բուխարայի տիրակալի պալատում, այնուհետև վտարվել է, մահացել չքավորության մեջ: Հեղինակ է «Գինու մայրը» (933) քասիդի, ինքնակենսագր. «Ծերունական քասիդի», մոտ 40 քառյակի և պոեմների բազմաթիվ հատվածների, քնար. և ուսուցող. գործերի: Ռ-ի և նրա ժամանակակիցների ստեղծած ոճը ֆարսի լեզվով պոեզիայում պահպանվել է մինչև XI դ-ը: Հայ. հրատարակվել են «Ժողովածու» (1958), «Բանաստեղծություններ» (2009), «Սիրտն ու քամին» (2009) ժող-ները:

ՌՈՒԴԵՆԿՈ Բելա Անդրեևնա (ծ. 1933), ուկրաինացի երգչուհի (քնարակոլորատուր. սոպրանո): ԽՍՀՄ ժող. արտիստ (1960): 1956-ից՝ Ուկր. ՕԲԹ-ի, 1973–88-ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մեներգչուհի (Նատաշա Ռոստովա՝ Ս. Ս. Պրոկոֆևի «Պատերազմ և խաղաղություն», Լյուչիա՝ Գ. Դոնիցետտիի «Լյուչիա դի Լամերմուր», ևն):

Մեներգիչների միջազգ. մրցույթի 3-րդ (1957, Թուլուզ), ԽՍՀՄ Պետ. (1971) մրց-ներ:

ՌՈՒԴԵՆԿՈ Լարիսա Արխիպովնա (1918–1981), ուկրաինացի երգչուհի (մեցցո-սոպրանո): ԽՍՀՄ ժող. արտիստ (1960): 1939–70-ին՝ Ուկր. ՕԲԹ-ի մեներգչուհի (Ամներիս՝ Ջ. Վերդիի «Աիդա», Կարմեն՝ Ժ. Բիզեի «Կարմեն», ևն):

ՌՈՒԴԵՆԿՈ Լյուդմիլա Վլադիմիրովնա (1904–1986), ռուս. շախմատիստուհի: Միջազգ. գրոսմայստեր (1976): ԽՍՀՄ ս. վ. վ. (1953): Աշխարհի (1950–53), ԽՍՀՄ (1952) չեմպիոն:

ՌՈՒԴԵՆԿՈ Օլեգ Վլադիմիրովիչ (ծ. 1947), ռուս. ֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (2008): Աշխ-ները վերաբերում են ոչ գծային ալիքներին, ոչ գծային և կենսաբժշկ. ձայնագիտությանը, ինտենսիվ փնջերի տեսությանը: ԽՍՀՄ (1985), ՌԴ (1997) Պետ. մրց-ներ:

ՌՈՒԴԻՄԵՆՏԱՅԻՆ ՕՐԳԱՆՆԵՐ (լատ.՝ rudimentum – սաղմ, նախահիմք), **թերաճ օրգաններ**, էվոլյուցիայի ընթացքում իրենց հիմն. ֆունկցիան կորցրած օրգաններ (օր.՝ խլուրդի և կուրամկան աչքերը, պոչային ողերը, մարմնի մազածածկույթը, մարդու որդանման ելունը ևն):

ՌՈՒԴՆԵՎ Լև Վլադիմիրովիչ (1885–1956), ռուս. ճարտ.: Լավագույն կառույցներն առանձնանում են ծավալների լակոնիզմով, օրդեր. ձևերի հմուտ օգտագործմամբ (Մ. Վ. Ֆրունզեի անվ. ռազմ. ակադ-ի, 1937, ՊՆ շենքերի, 1934–38, երկուսն էլ՝ Մոսկվայում, ևն): Հեղինակ է նաև ՄՊՀ համալիրի նախագծի (1949–53): ԽՍՀՄ Պետ. մրց. (1949):

ՌՈՒԴՆԵՎ Միխայիլ Մատվեևիչ (1837–1878), ռուս. բժիշկ, ախտաբան. անատոմիայում փորձարար. ուղղություն հիմնադիրը Ռուսաստանում: Գիտ. դպրոցի հիմնադիր: Աշխ-ները վերաբերում են ուռուցքների ձևաբանությանը, վարակիչ հիվանդությունների ախտաբանությանը, հյուսվածքների ռեգեներացմանը:

ՌՈՒԴՆԵՎ Սեմյոն Վասիլևիչ (1899–1943), գեն-մայոր (1943): ԽՄ հերոս (1944, հետմահու): ՀՄՊ-ի ժամանակ՝ պարտիզան. շարժման կազմակերպիչներից և ղեկ-ներից, Սամիի մարզի պարտիզան. ջոկատի (1941), ապա Ս. *Կովպակի* ջոկատի հետ միավորված ջոկատների հրամ.: Զոհվել է մարտում:

ՌՈՒԴՈԼՖ (Rudolph) Պոլ (1918–1997), ամերիկացի ճարտ.: Կառույցներին բնորոշ են մոնումենտալությունը, հորինվածքի, ծավալների և տարած. բջիջների բարդությունը, նյութերի հակադրությունը (վարչ. շենք Բոստոնում, 1971):

ՌՈՒԴՈԼՖ Վիլմա (1940–1994), ամերիկացի աթլետուհի: Օլիմպ. խաղերի եռակի չեմպիոն (1960): Աշխարհի ռեկորդակիր (1960–61):

ՌՈՒԴՈԼՖ I (Rudolf, 1218–1291), Գերմանիայի թագավոր՝ 1273-ից: Հաբսբուրգների հարստության առաջին ներկայացուցիչը: Նվաճել է Ավստրիան և Շտիրիան (1282):

ՌՈՒԴՈԼՖ II (1552–1612), Հռոմ. սրբազան կայսրության կայսր՝ 1576-ից, Ավստրիայի էրցհերցոգ՝ 1576-ից՝ Հաբսբուրգների հարստությունից: Գահակալ. պայքար է մղել եղբոր դեմ՝ 1608-ին նրան զիջելով Ավստրիան, Հունգարիան և Մորավիան, իսկ 1611-ին՝ Չեխիան:

ՌՈՒԴՈԼՖԻ (Rudolphi) Կառլ Ասմունդ (1771–1832), գերմանացի բնախույզ: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. անդամ (1803): Մշակել է հելմինթների կարգաբանության և ձևաբանության հիմքերը: Աշխ-ներ ունի նաև մարդու ֆիզիոլոգիայի վերաբերյալ:

ՌՈՒԴՈԼՖԻ ԿՂԶԻ, Ֆրանց-Իոսիֆի Երկիր կղզեխմբի ամենահս. կղզին: Տարածքը՝ 297 *կմ*^{2}: Բարձր.՝ մինչև 461 *մ*: Գրեթե ամբողջովին ծածկված է սառույցով: Գոր-

ծում է բևեռ. կայան (1932–ից): Ավստրիացի հետազոտող Յ. Պայերն անվանել է ի պատիվ ավստր. Ռուդոլֆ արքայազնի:

ՌՈՒԴՐԱ, չար աստվածություն վեդայական դից–յան մեջ, բնության կործանիչ ուժի մարմնացումը, մարուտների հայրը, նետաձիգ ռազմիկ: Պատկերվել է ցլի կամ վարազի կերպարանքով:

ՌՈՒԶՎԵԼՏ (Roosevelt) Թեոդոր (1858–1919), ԱՄՆ 26–րդ նախագահը՝ 1901–09–ին՝ Հանրապետ. կուս–յունից: 1901–ի հունվ–ից՝ ԱՄՆ փոխնախագահ, սեպտ–ից (Ու. Մաք Քինլիի սպանությունից հետո)՝ նախագահ: Առաջադրել է բուրժ. ռեֆորմիզմի ծրագիր: Վարել է ակտիվ արտաքին քաղ–յուն, Հվ. Ամերիկայի երկրների նկատմամբ կիրառել է «մեծ մահակի» քաղ–յունը: 1904–05–ի ռուս–ճապոն. պատերազմի ժամանակ ֆին. և դիվանագիտ. աջակցություն է ցուցաբերել Ճապոնիային:

Նորեյան Խաղաղության մրց. (1906):

ՌՈՒԶՎԵԼՏ Ֆրանկլին Դելանո (1882–1945), Ամերիկայի 32–րդ նախագահը՝ 1933–45–ին՝ Դեմոկրատ. կուս–յունից: 1933–ին Ռ–ի կառ–յունը դիվանագիտ. հարաբերություններ է հաստատել ԽՍՀՄ–ի հետ, տնտ. ճգնաժամի հետևանքները վերացնելու նպատակով անցկացրել մի շարք բարեփոխումներ («նոր կուրս»): Արտաքին քաղ–յան ասպարեզում Ռ. իրեն դրսևորել է որպես ռեալիստ պետ. գործիչ: ԵՀՊ–ի սկզբից հանդես է եկել Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի, ավելի ուշ (1941–ի հունիսի 24–ին)՝ ԽՍՀՄ պաշտպ–յամբ: Խոշոր ավանդ է ներդրել հակահիտլեր. կոալիցիայի ստեղծման գործում: Կարևորել է ՄԱԿ–ի ստեղծումը:

ՌՈՒԹԵՆԻՈՒՄ (Ruthenium), Ru, տարրերի պարբեր. համակարգի VIII խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 44, ա. զ.՝ 101,07, անցումային տարր է, պլատինային մետաղ: Անվանումը՝ ուշ լատ. Ruthenia – Ռուսաստան բառից (հայտնագործել է Կ. Կ. *Կլաուսը*): Ռ. հազվագյուտ և ցրված տարր է: Սպիտակ, արծաթափայլ մետաղ է, խտ.՝ 12,37 $գ/սմ^3$, $t_{հալ.}$՝ 2250°C: Մեծ ամրություն և մաշակայունություն ունեցող համաձուլվածքների բաղադրիչ է, կատալիզորդ՝ մի շարք քիմ. ռեակցիաների համար:

ՌՈՒԺԵ ԴԸ ԼԻԼ (Rouget de Lisle) Կլոդ Ժոզեֆ (1760–1836), ֆրանսիացի բանաստեղծ, կոմպոզիտոր, ռազմ. ճարտարագետ: Հեղինակ է հիմների, երգերի, ռոմանսների: Նրա «Մարսելյեզ» (1792, հայ.՝ 1906) երգը դարձել է Ֆրանսիայի պետ. օրհներգը:

ՌՈՒԺԵՎԻՉ (Różewicz) Թադեուշ (1921–2014), լեհ գրող: Հեղինակ է «Անհանգստություն» (1947), «Անտառների արձագանքը» (1985), «Ելք» (2004) բանաստեղծությունների ժող–ների, հակապատերազմ. և հակաքաղքենիական թեմաներով «Քարտարան» (1961), «Վկաները» (1962), «Չորեքթաթ» (1972), «Թակարդ» (1982) դրամաների, «Մայրը հեռանում է» (1999) վեպի, նաև պոեմների, պատմվածքների և այլ գործերի: Հայ. հրատարակվել է «Սաթե թռչունը» (1970) բանաստեղծությունների ժող–ը: Լեհաստանի (1955, 1966), Ավստրիայի (1981) Պետ. մրց–ներ:

ՌՈՒԺԻՉԿԱ (Ružička) Լեոպոլդ (1887–1976), շվեյցարացի քիմիկոս–օրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1958): Աշխ–ները վերաբերում են բնական ալիցիկլիկ միացությունների, այդ թվում՝ տերպենների, ստերոիդային հորմոնների, հոտավետ նյութերի սինթեզին և քիմ. կառուցվածքին: Նորելյան մրց. (1939):

ՌՈՒԻՍ ԴԵ ԱԼԱՐԿՈՆ Ի ՄԵՆԴՈՍԱ (Ruiz de Alarcón y Mendoza) Խուան (մոտ 1581–1639), իսպանացի դրամատուրգ: Հեղինակ է «Սեգովիացի ջուլհակը» (հրտ.՝ 1634) պատմ., «Պատերն էլ ականջներ ունեն» (հրտ.՝ 1628), «Կասկածելի ճշմարտություն» (հրտ.՝ 1634) «բնավորությունների կատակերգություն» կոչվող պիեսների:

ՌՈՒԼՅԵ (Rouillier) Կառլ Ֆրանցևիչ (1814–1858), ռուս. կենսաբան (ծագումով՝ ֆրանսիացի): Հսաէկոլոգիայի և էվոլյուցիոն հնէաբանության հիմնադիրներից: Կենդանաբան–էվոլյուցիոնիստների առաջին գիտ. դպրոցի ստեղծողը: Աշխ–ները վերաբերում են Ռուսաստանի ժամանակակից և բրածո ֆաունային: Ապացուցել է կենդանի ձևերի էվոլյուցիայի պատճառ. կախվածությունը նրանց ապրելավայրի միջավայրի փոփոխություններից:

ՌՈՒԽԿՅԱՆ Աշոտ Արամի (1903–1993), անասնաբույծ–ընտրասերումնաբան: Գղտ. գիտ. դ–ր (1942), պրոֆ. (1942): ՀամԳԳԱ ակադ. (1972): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): Մարգարիտ *Ռուխկյանի* հայրը: Ռ–ի ղեկավարությամբ ստեղծվել է հայկ. կիսակոպտաբուրդ ոչխարի ցեղը (հաստատվել է 1984–ին):

ՌՈՒԽԿՅԱՆ Հրաչյա Լիպարիտի (1915–1992), նկարիչ: ՀՀ ժող. նկարիչ (1985): Ստեղծագործել է հիմնականում գրաֆիկայի բնագավառում: Ճանաչվել է որպես Սայաթ–Նովայի դիմանկարի (1945) ստեղծող: Ուշագրավ է Ռ–ի «Բույլ հանճարաց» դիմանկարների շարքը («Մեսրոպ Մաշտոց», 1962, «Կոմիտաս», 1946–79, «Վ. Համբարձումյան», 1980, բոլորը՝ կավճանկարներ, ևն): Հեղինակ է նաև խճանկարների (Հ. Թումանյանի, 1969, Ալավերդի՝ ժայռի վրա, ևն), նատյուրմորտների, բնանկարների, գրքերի նկարազարդումների և ճեպանկարների շարքի՝ Ա. Իսահակյանի քառատողերով (1975):

ՌՈՒԽԿՅԱՆ Մարգարիտ Աշոտի (ծ. 1937), երաժշտագետ: Արվեստագիտ. դ–ր (2005): Աշոտ *Ռուխկյանի* դուստրը, Կարեն *Քալանթարի* կինը: Հեղինակ է «Հայկական սիմֆոնիա. Հետազոտական ակնարկներ» (1980), «Ավետ Տերտերյան: Ստեղծագործությունն ու կյանքը (2002), «Արամ Խաչատրյան. նամակներ» (2003, համահեղ., ժող., երեքն էլ՝ ռուս.) և այլ աշխ–ների:

ՌՈՒԿԱՎԻՇՆԻԿՈՎ Յուլիան Միտրոֆանովիչ (1922–2000), ռուս. քանդ.: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1988): Ռուսաստանի գեղարվ–ի ակադ–ի անդամ (1997): Հեղինակ է պլաստիկ, արտահայտիչ հաստոց. («Հյուսիսային ծով», 1980) և մոնումենտալ–դեկորատիվ կոմպոզիցիաների, հուշարձանների (Ա. Պ. Չեխովի, Տագանրոգ, 1960):

ՌՈՒԿԱՎԻՇՆԻԿՈՎ Նիկոլայ Նիկոլաևիչ (1932–2002), ռուս տիեզերագնաց օդաչու, փոխգնդ.: ԽՄ հերոս (1971, 1974): Կատարել է 3 տիեզ. թռիչք (1971, 1974, 1979)՝ որպես բորտինժեներ և հրամ.: Թռիչքի ընդհ. տևողությունը՝ 9 օր 21 *ժ* 10 *ր*:

ՌՈՒՄԲ, 1. հրետան. արկի հնացած անվանումը: XIX դ–ից՝ ռուս. հրետանիում: 2. **Ավիացիոն Ռ.**, վերերկրյա և ծով. նպատակակետերի խոցման համար ինքնաթիռից կամ որևէ այլ թռչող սարքից նետվող ավիացիոն ռազմամթերքի տեսակ: Լինում են միջուկ. (տես ***Միջուկային ռումբ***), ֆուգասային, բեկոր., հակատանկ., հականավ. ևն: ԵՀՊ–ի ժամանակ առաջին անգամ կիրառվել են կառավարվող ավիացիոն և ատոմային ռումբեր: 3. **Խորքային Ռ.**, ջրի տակ սուզանավերի խոցման արկ: Տարբերում են ավիացիոն և նավային խորք. Ռ–եր: Առաջին անգամ խորք. Ռ–երը կիրառվել են ԱՀՊ–ում, իսկ ԵՀՊ–ում ծառայել են որպես հականավ. զենքի կարևորագույն տեսակ:

ՌՈՒՄԲԱ, (իսպ.՝ rumba), աֆրոամերիկ. պարերգ. ժանր: 1920–ական թթ–ի վերջին տարածվել է ԱՄՆ–ում և Եվրոպայում՝ որպես հանդիսապար:

ՌՈՒՄԵԼԻԱ, (թուրք.՝ Rumeli), XIV–XVI դդ–ի թուրք–օսմանների զավթած Բալկանյան երկրների ընդհ. անվանումը: XVI դ–ի վերջ–XIX դ–ում՝ թուրք. նհնգ՝ Սոֆիա կենտրոնով (ընդգրկել է Բուլղարիան, Սերբիան, Հերցեգովինան, Ալբանիան, Մակեդոնիան, Էպիրոսը և Թեսալիան): Թուրքիայի եվրոպ. մասի (բացի Ստամբուլից) ժամանակակից անվանումը:

ՌՈՒՄԻ Ջալալեդդին (1207–1273), պարսիկ սուֆի բանաստեղծ: Հայտնի է «Մասնավի–մանավի» («Պոեմ բարոյագիտական», մատյան 1–6) երկը: Հեղինակ է նաև քնար. «Դիվան»–ի, փիլ. մի շարք աշխ–ների: Ռ–ից հայ. առաջին թարգմ–յունը (մեկ երկտող) պահպանվել է 1700–ին գրված մի մատյանում (Մտնդ., ձեռ. № 6146): Հայ. հրատարակվել են Ռ–ի գործերից:

ՌՈՒՄԻՆԵՐԵՆ, ռումինների լեզուն, Ռումինիայի և Մոլդովայի պետ. լեզուն: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի ռոման. ճյուղին: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՌՈՒՄԻՆԻԱ (România), պետություն Արլ. Եվրոպայում: Սահմանակից է Ուկրաինային, Մոլդովային, Բուլղարիային, Սերբիային և Հունգարիային: Տարածքը՝ 237,5 հզ. $կմ^2$, բն.՝ 22,2 մլն (2009): Մայրաքաղաքը՝ *Բուխարեստ*: Պետ. լեզուն՝ ռում.: Կառավարման ձևը՝ խառը հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը: Բաժանված է 40 վոմ–ի (ժուդեց), ինքնուրույն վոմ է մայրաքաղաքը: Հավատացյալների մեծ մասն ուղղափառ քրիստոնյա է: Անդամակցում է ՄԱԿ–ին, ՆԱՏՕ–ին, ԵՄ–ին, ԵԱՀԿ–ին, ԱտոՀԿ–ին ևն: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 11,5 հզ. ԱՄՆ դոլար է (2013): Արտահանում է մեքենաներ և սարքավորումներ, մետաղներ, տեքստիլ, քիմիկատներ, գյուղմթերք ևն, ներմուծում՝ նավթ, մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, սպառող. ապրանքներ ևն: Դրամ. միավորը՝ լեյ:

Մ. թ. ա. I դ–ի կեսին ժամանակակից Ռ–ի տարածքում բնակվել են գետա–դակիական ցեղերը: Մ. թ. I դ–ում Տրանսիլվանիայում կազմավորվել է դակիական վաղստրկատիր. պետություն: II դ–ի սկզբին ընկել է հռոմ. տիրապետության տակ (մինչև 271–ը) և կոչվել Դակիա հռոմ. պրովինցիա: III դ–ի վերջին Դակիա են թափանցել հոնները, լանգոբարդները, ավարները: VI–VII դդ–ում Ռ–ի տարածքում բնակություն են հաստատել սլավոնները: Ռում. առաջին պետ. կազմավորումները (Վալախիան և Մոլդովան) ձևավորվել են XIV դ–ում: XVI դ–ում՝ Վալախիայի, ապա Մոլդովայի իշխանությունները կախման մեջ են ընկել

Օսմ. կայսրությունից: 1859–61-ին այդ իշխանությունները, որոնք դեռևս 1829-ին Ռուսաստանի օգնությամբ հասել էին որոշակի ինքնավարության, միավորվել են մեկ միասն. պետության մեջ՝ որոշակի վասալ. կախման մեջ մնալով Օսմ. կայսրությունից: 1877–78-ի ռուս-թուրք. պատերազմի արդյունքում Ռ. անկախացել է, իսկ 1881-ին հռչակվել է թագավորություն: 1940-ին Ռ-ում հաստատվել է ռազմ. բռնապետություն, երկիրը միացել է ֆաշիստ. պետությունների Բեռլինյան դաշինքին և 1941-ին Գերմանիայի հետ պատերազմել է ԽՍՀՄ-ի դեմ: 1944-ին Ռ. են մտել խորհրդ. զորքերը: 1947-ին վերացվել է միապետությունը: Մինչև 1989-ը իշխանության ղեկին եղել է Ռ-ի կոմ. կուս-յունը (1965-ից գլխ. քարտուղար՝ Ն. *Չաուշեսկու*, 1974-ից՝ Ռ-ի նախագահ): 1989-ի ապստամբությամբ Չաուշեսկուի բռնապետությունը վերացվել է: 1991-ին ընդունվել է նոր սահմանադրություն: 2004-ին Ռ. անդամակցել է ՆԱՏՕ-ին, 2007-ին՝ ԵՄ-ին:

Ռ-ի հայկ. գաղութը Եվրոպայում հնագույններից է: Ենթադրվում է, որ արդեն V–XII դդ-ում հայերի հոծ զանգվածներ են բնակվել Ռ-ի տարածքում: Հայերի հոսքը Ռ. ուժեղացել է Անիի անկումից (XI դ.) հետո: 1350-ին Բոտոշանում կառուցվել է Ռ-ի առաջին հայկ. եկեղեցին, հայերն ունեցել են իրենց հոգևոր թեմը, որը 1365-ից ենթարկվել է Լվովի հայկ. եպիսկոպոսությանը: XIV դ-ում Ալեք-սանդր Բարեպաշտը 1401-ին հայերին արտոնել է Սուչավա մայրաքաղաքում հիմնել եպիսկոպոս. թեմ: Միջնադար. Ռ-ում եղել է շուրջ 20 հզ. հայ: Նրանք մասնակցել են քաղաքների շենացմանը, առևտրի, արհեստների զարգացմանը, վայելել բացառիկ առանձնաշնորհներ, ունեցել են իրենց քաղաքապետարան-ները, դատարանները, վաճառական., հոգևոր և կտրիճների (պատանիների) եղբայրություններ, առաջնորդվել հայկ. օրենքներով: XV–XVII դդ-ում Ռ-ի ներքին և արտաքին առևտուրը հիմնականում կենտրոնացած էր հայերի ձեռքում: Հայերը խթանել են նաև արհեստների զարգացումը: 1845-ին Գրիգոր Անուշօղլուն Բուխարեստում հիմնել է շոգեաղաց: Ռ-ի հայերը հայկ. բոլոր կենտրոններում (Բոտոշան, Ֆոկշան, Բուխարեստ, Գալաց, Ռոման, Բրըիլա, Կոնստանցա, Պիտեշտի, Տուլչա ևն) կառուցել են եկեղեցիներ, վանքեր, մատուռներ: Սուչավայում գոյ-սօր կանգուն են 2 եկեղեցի, երկուական վանք և մատուռ: Սուչավայի Սբ Օգանես-տի կամ Ջամկայի վանքը 1401–1686-ին եղել է թեմի առաջնորդանիստը: Հոգևոր առաջնորդարան է եղել նաև Յասսիում: Եկեղեցիներին և վանքերին կից գործել են հայկ. դպրոցներ: Առանձին դպրոց-ներ են գործել Յասսիում, Ֆոկշանում, Ռոմանում, Բուխարեստում, Գալացում, Կոնստանցայում և այլուր: 1841-ին Հ. Պըյրգլյանի ջանքերով հաստատվել է հայկ. գաղութի միասն. կանոնադրութ-յունը, և Ռ-ի իշխան Միհայ Ստուրգայի հրովարտակով հայկ. դպրոցներն անցել են պետ. հովանավորության ներքո: Յաս-սի, Գալաց, Բրըիլա, Տուլչա, Բուխարեստ ք-ներում գործել են տպարաններ, որ-տեղ տպագրվել են հայ. գրքեր և շուրջ 50 անուն պարբ-ներ: 1922-ին ընդունվել է համայնքի կանոնադրությունը, որը 1931-ին վավերացրել է ռում. կառ-յունը: 1948–55-ին Ռ-ի հայոց թեմական առաջ-նորդն էր Վազգեն Պալճյանը (*Վազգեն Ա*): Ռ-ի հայերը մասնակցել են ոչ միայն երկրի քաղ., տնտ., մշակութ. կյանքին, այլև ռումին ժողգ-ի հետ պայքարել են օտար նվաճողների դեմ: Թուրքերի դեմ կռվող Շտեֆան Մեծի զորքում եղել են բազմաթիվ հայ զինվորներ: XVI դ-ում երկրում իշխանությունն անցել է Սեր-պեգա հայազգի գերդաստանին: Իշխան Միհայ Վիտեազուլի խորհրդականը եղել է հայազգի դիվանագետներ Արմին Պետերը: Դիվանագետներ էին նաև Սուչավայի զորքերի հրամ. Պետրե Վարդիկը, Մա-նուկ Բեյ Միրզայանը, որի իջևանատանը («Հանուլ Մանուկ») 1812-ին կնքվել է Բու-խարեստի հաշտության պայմանագիրը: 1877–78-ին Թուրքիայի դեմ պատերազ-մում գեն-ի կոչման է արժանացել հա-յազգի ռազմ. գործիչ Մ. Զերքեզը: Խոշոր լուսավորիչ էր Ա. Գեորգեն: Նշանավոր են հայազգի գիտնականներ Վ. Կոնտան, Ս. Հարեթը, Պ. Միսիրը, բժիշկներ Ք. Պուիկ-լիուն, Յ. Յակոբովիչը, ծերաբան Ա. Ալա-նը, հոգեբույժ Լ. Միրախորյանը, գրողներ Կ. Իրրըիլեանուն, Վ. Մեշտուճյանը, Յ. Բարբուն, Յ. Միսիրը, Հ. Սիրունին, Ա. Շա-հիկյանը, Վ. Առաքելյանը, Տիգրան (Դիկ) Բաբոյանը, Պ. Խորասանճյանը, Գ. Տիրա-տուրյանը, Դ. Դեշլիուն, Ա. Ներսեսյանը, դերասան Յ. Պետրեսկուն, ռեժ-ներ Յ. Շահիկյանը, Հ. Աքթերյանը, Վ. Պատրիկը, Չափրաստը, երաժշտագետ Է. Չոմակը, կոմպոզիտորներ Մ. Ժորան, Մ. Սոկորը, արվեստաբան Գ. Զամպաքճյանը, նկա-րիչներ Չ. Տամատյանը, Ն. Ագռնցը, Ա. Բալթազարը, Բ. Վարդանյանը, Ս. Թո-րոսյանը, Ա. Ղարիբյանը, Հ. Ավագյանը, քանդ. Հ. Թորոսյանը, երգիչներ Կ. Զոբյա-նը, Դ. Հովհաննիսյանը, Է. Թումաճանյա-նը, Ա. Սվաճյանը և ուր.: ԵՀՊ-ի ժամանակ մեծ թվով ռումինահայեր մասնակցել են հակաֆաշիստ. շարժմանը: Պարտիզան. շարժման գործիչներ էին Մ. Խաչերյանը, Մ. Մկրտչյանը, Տ. Սարգարյանը և ուր.: Առավել աչքի ընկնող հայերից է պետ. գործիչ, գրող Վարուժան *Ռականյանը*: 1946–48-ին շուրջ 3 հզ. ռումինահայ ներգաղթել է Հայաստան: Շատերն էլ արտագաղթել են ԱՄՆ, Կանադա և այ-լուր: Ռ-ում ներկայում բնակվում է շուրջ 3 հզ. հայ՝ կենտրոնացած Բուխարեստում, նաև Կոնստանցայում, Պիտեշտիում ևն: Մինչև 1960-ական թթ-ի սկիզբը Ռ-ում գործել են հայ ազգ. կուս-յունների (ՀՅԴ, Հնչակյան, ՌԱԿ) տեղ. կազմ-յունները, ՀԲԸՄ, ՀՕՄ, Կարմիր խաչի, ՀՄԸՄ մաս-նաճյուղերը, ուսանողների և տիկնանց ընկ-ներ, «Բաֆֆի» և «Երևան» մշակութ. և «Կոմիտաս» երաժշտ. ընկ-ները, «Սո-խակ», «Արաքս», «Նաղեժդա», «Արշա-լույս», «Աստղիկ», «Զեփյուռ», «Հակոբ Պարոնյան» թատերախմբերը, որոնց գործունեությունը դադարեցվել է համայ-նավար. վարչակարգի օրոք: 1990-ին իր գործունեությունն է վերսկսել Ռ-ի հայոց միությունը (ՌՀՄ): Գործում են Բուխա-րեստի Սբ Հրեշտակապետաց Մայր տա-ճարը, Պիտեշտիի Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, Կոնստանցայի աղոթատեղին, Հայ մշակույթի տունը՝ գրադարանով ու թանգարանով: 1992-ին բացվել է կիրակ-նօրյա հայկ. մանկապարտեզ, կազմա-կերպվում են նաև հայ-ի դասընթացներ: Վերականգնվել և գրանցվել է Ռ-ի հայ մարմնակրթ. ակումբը: Տես նաև *Ռումի-նիայի հայկական տպագրություն*:

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԱ, հիմնա-դրվել է 1948-ին Բուխարեստում՝ Ռում. ակադեմ. ընկ-յան (հիմն.՝ 1866, 1879-ից՝ ակադ.) հիմքի վրա: 2015-ին ուներ ավելի քան 60 ԳՀԻ և ԳՀ կենտրոն, ավելի քան 180 ակադ., 130 պատվ. անդամ: Ռում. ակադ-ի անդամ են եղել մի շարք ռումի-նահայ մտավորականներ:

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱ-ԳՐՈՒԹՅՈՒՆ, XIX դ-ի վերջերից Ռումի-նիայի Ֆոքշան, Յասսի, Գալաց, Բուխա-րեստ, Բրըիլա, Տուլչա ք-ներում գործել են հայկ. տպարաններ, որտեղ լույս են տեսել շուրջ 50 անուն պարբ-ներ, ինչպես նաև գեղ., պատմ., կրոն. գրքեր: 1-ին՝ Հայաս-տանյայց ընկ-յան տպարանը բացվել է Ֆոքշանում 1877-ին, 2-րդ՝ «Անի» տպա-րանը Գալացում հիմնադրել է Ղևոնդ քհն. Փափազյանը 1891-ին. գործել է մինչև 1902-ը: Բուխարեստում 1912-ին *«Շեփոր»* պարբ-ի տպարանում տպագրվել են նաև գեղ. գրքեր: Ռումինիայում լույս են տեսել ազգ. քաղ. «Արօր» (1892–94, Գալաց), *«Անի», «Արարատ», «Սևան»* հանդես-ները, *«Հայ հանրագիտակ»* հանրագիտ. տեղեկատուն, *«Արագ», «Նոր արշալոյս»*, «Պահակ» թերթերը (բոլորը՝ Բուխարեստ) և այլ պարբ-ներ: Ներկայում Բուխարես-տում հրատարակվում են *«Նոր կեանք»*, *«Արարատ»* պարբ-ները:

ՌՈՒՄՅԱՆՑԵՎ Վալերի Վիտալիչ (1921–2007), ռուս մեխանիկոս: ՌԳԱ ակադ. (1992): Աշխ-ները վերաբերում են մեխ. համակարգի շարժման կայունության կա-ռավարման և կայունացման հարցերին, անալիտիկ դինամիկային:

ԽՍՀՄ (1980), ՌԴ (1996) Պետ. մրց-ներ:

ՌՈՒՄՅԱՆՑԵՎ-ԶԱԴՈՒՆԱՅՍԿԻ Պյոտր Ալեքսանդրովիչ (1725–1796), ռուս. զո-րահրամ., գեն-ֆլդմ. (1770): Յոթնամյա պատերազմի ժամանակ գրավել է Կոլ-բերգ ամրոցը: 1768–74-ի ռուս-թուրք. պատերազմի ժամանակ հաղթանակներ է տարել Ռյաբայա Մոգիլայում, Լարգեում և Կագուլեում (1770):

ՌՈՒՄՈՎՍԿԻ Ստեպան Յակովլևիչ (1734–1812), ռուս. աստղագետ: Ս. Պետեր-բուրգի ԳԱ ակադ. (1767): Հաշվել է Արե-գակի *պարալաքսը*, որը մոտ է ներկայում ընդունվածին: Կազմել է Ռուսաստանում 1-ին աստղ. կատալոգը:

ՌՈՒՆԳԵ (Runge) Ֆիլիպ Օտտո (1777–1810), գերմանացի գեղանկարիչ, գրաֆիկ, արվ-ի տեսաբան: Գերմ. ռոմանտիզմի հիմնադիրներից: Դիմանկարներին բնո-րոշ է կերպարների ճշմարտացիության և հուզականության զուգորդումը («Մենք՝ երեքով», 1805), «Առավոտ» (1808) այլա-բան. կոմպոզիցիային՝ բնության միստիկ. ոգեշնչվածության մասին մարմնավոր-ման միտքը:

ՌՈՒՆԴԻ (ինքնանվանումը՝ բարունդի), բանտու խմբի ժողգ, *Բուրունդիի* հիմն. բնակչությունը: Բաժանվում են հուտու (7 մլն, 2010), թութսի (1,1 մլն) և պիգմեյների տվա (100 հզ.) խմբերի: Ապրում են նաև Տանզանիայում (650 հզ.), Ռուանդայում (450 հզ.) և Ուգանդայում (200 հզ.): Լե-զուն՝ ռունդի: Պահպանում են ավանդ. հավատալիքները, կան նաև կաթոլիկներ:

ՌՈՒՆԴԻ ԼԵԶՈՒ, *Բուրունդիի* պետ. լե-զուներից: Պատկանում է բենուե-կոնգո-լեզյան լեզուների բանտու խմբին: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՌՈՒՆԵՐ, 1. քարի (գլխավորապես՝ տապանաքարերի), մետաղի, փայտի, ոսկրի վրա փորագրված գերմ. հնագույն այբուբենի՝ ռունական գրի նշաններ: Օգտագործել են սկանդ. և գերմ. մյուս ժողդ-ները (II–XIII դդ.): 2. Հին թյուրք. գիր (VIII–X դդ.). հիմնված էր սոգդական գրի վրա, որն արամեական գրի տարբերակ էր: 3. Կարելների և ֆինների էպիկ., ինչպես նաև մերձբալթյան-ֆիննո ժողդ-ների տարբեր ժանրերի երգեր: Ռ-ի թեմաները ծագումնաբանորեն կապված են տիեզերածին առասպելների հետ: Ռ-ից են բաղկացած *«Կալևալա»* և *«Կալևիպոեգ»* էպոսները:

ՌՈՒՇԴԻ (Rushdie) Սալման (ծ. 1947), հնդիկ անգլիագիր գրող: 1964-ից՝ Մեծ Բրիտանիայում: Հեղինակ է «Կեսգիշերի երեխաները» (1981), «Ամոթ» (1983), «Սատանայական բանաստեղծություններ» (1988) այուրեալիստ. վեպերի: Վերջին վեպի համար, հակաիսլամ. մեղադրանքով, այաթոլլա Խոմեյնին Ռ-ին հեռակա մահապատժի է դատապարտել (Ռ. ստիպված է թաքնվել մահմեդ. մոլեռանդներից), որն առաջացրել է միջազգ. հանրության բողոքը: Հեղինակ է նաև «Սավրի հրաժեշտի հոգոցը» (1995), «Հողը նրա ոտքի տակ» (1999), «Շալիմար ծաղրածուն» (2005), «Զոզեֆ Անտոն» (2012, ինքնակենսագր.), «Երկու տարի ութ ամիս և քսանութ գիշեր» (2015) վեպերի, նաև պատմվածքների, էսսեների, հեքիաթների: «Բուքեր» մրց. (1981):

ՌՈՒՍ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ, սևհարյուրակայինների կազմ-յուն Ռուսաստանում: Հիմնադրվել է 1905-ի նոյեմբ-ին, կենտրոնը՝ Ս. Պետերբուրգ: Ղեկ-ներ՝ Ա. Ի. Դուբրովին, Վ. Մ. Պուրիշկևիչ, Ն. Ե. Մարկով: Նպատակն աշխատավորների կացությունը բարելավելն էր: 1908-ին նրանից անջատվել է Միքայել հրեշտակապետի միությունը: 1910–12-ին բաժանվել է 2 առանձին կազմ-յունների՝ Ռ. ժ. մ. և Ռուս ժողդ-ի համառուսաստանյան միություն: Փետր. հեղ-յունից հետո գործունեությունն արգելվել է:

ՌՈՒՍԱ Ա. (ծ. թ. անհտ–մ. թ. ա. 714), Վանի թագավորության (Ուրարտու) թագավոր՝ մ. թ. ա. մոտ 735-ից: *Սարդուրի Բ*-ի որդին և հաջորդը: Գլխ. հակառակորդի՝ Ասորեստանի դեմ ստեղծել է ռազմաքաղ. խմբավորումներ, որով Ռ. Ա դժվար կացության մեջ է դրել Ասորեստանի թագավոր Սարգոն II-ին: Իրադրությունը փոխվել է, երբ մ. թ. ա. 715-ին Ռ. Ա-ի զորաբանակը պարտվել է կիմերներից: 714-ին Սարգոն II-ը ներխուժել է Վանի թագավորություն, ավերել ու կողոպտել նրա հվ. գվո-ները: Մուսասիրի տաճարի կործանումից հետո Ռ. Ա ինքնասպան է եղել:

ՌՈՒՍԱ Բ, Վանի թագավորության (Ուրարտու) թագավոր՝ մ. թ. ա. մոտ 685–645-ին: *Արգիշտի Բ*-ի որդին և հաջորդը: 670-ական թթ-ին դաշնակցել է կիմերների հետ և արշավել անդրեփրատյան երկրներ: Ռ. Բ ռազմաքաղ. դաշինք է հաստատել նաև սակերի հետ, որոնք այդ ժամանակ հզոր թագավորություն էին հիմնադրել Կուր գետի արլ. ավազանում: Ձվարթնոցի մոտ հայտնաբերված մի արձանագրության մեջ Ռ. Բ հիշատակում է պարտեզների ու այգիների հիմնադրման, Իլդարունի (Հրազդան) գետից ջրանցքի կառուցման (ցարդ գործում է) և այդ առթիվ աստվածներին զոհեր մատուցելու մասին: Հիմնադրել է նաև Թեյշեբաինի բք-ն, այլ բերդեր ու տաճարներ:

ՌՈՒՍԱ Գ, Վանի թագավորության (Ուրարտու) թագավոր՝ մ. թ. ա. մոտ 617–609-ին: Էրիմենա թագուհու որդին և հաջորդը: Անունը հիշատակված է Թոփրակկալեից (Վան ք-ի հս-արլ-ում) հայտնաբերված վահանների և այլ առարկաների վրա: Ռ. Գ շին. աշխ-ներ է ծավալել Էրեբունիում և Արգիշտիխինիլիում, որտեղ հայտնաբերվել են շտեմարաններ կառուցելու վերաբերյալ նրա արձանագրությունները:

ՌՈՒՍԱ Դ, Վանի թագավորության (Ուրարտու) թագավոր՝ մ. թ. ա. մոտ 609–590-ին: *Ռուսա Գ*-ի որդին և հաջորդը: Հիշատակվում է *Կարմիր բլուրի* որոշ պեղածոների, այդ թվում՝ իր արքայադրշմ կավե սալիկների արձանագրություններում:

«ՌՈՒՍԱԼ–ԱՐՄԵՆԱԼ» ՓԲԸ, գունավոր մետաղագործության ձեռն. ՀՀ-ում: Ստեղծել է «Ռուսալ» ընկ-ը 2000-ին՝ Քանաքեռի ալյումինի գործարանի հիմքի վրա (հիմն.՝ 1940): 2003-ից ամբողջությամբ պատկանում է «Ռուսալ» ընկ-յանը: Արտադրում է ալյումինե փայլաթիթեղներ և ժապավեններ: Հզորությունը՝ տարեկան 30 հզ. *տ*: Կենտրոնատեղին՝ Երևանում:

ՌՈՒՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԴՐԱՄԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ Ա. Ս. Պուշկինի անվան, հնագույն ռուս. դրամատիկ. թատրոն: Հիմնադրվել է 1756-ին Ս. Պետերբուրգում, 1832-ից՝ Ալեքսանդրյան թատրոն, 1919-ից՝ ակադեմ., 1920-ից՝ Պետերբուրգի (1924-ից՝ Լենինգրադի) ակադեմ. դրամայի թատրոն, 1937-ից՝ Ա. Ս. Պուշկինի անվ., 1991-ից՝ ներկա անվանումով: Թատրոնը ղեկավարել են Ն. Վ. Պետրովը, Լ. Ս. Վիվիենը, Ի. Օ. Գորբաչովը, Վ. Վ. Ֆոկինը (2003-ից):

«ՌՈՒՍԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ», Հս. Ամերիկայի ռուս. տիրույթների (Ալյասկա, Հս. Կալիֆոռնիա, Ալեության կղզիներ) անվանումը XVIII–XIX դդ-ում: Բացահայտել և հետազոտել են ռուս ճանապարհորդները: Ռուս. բնակավայրերը հիմնադրվել են 1784-ից: Վարչ. կենտրոնը՝ Նովոարխանգելսկ (Բառանովա կղզում, այժմ՝ ք. Սիտկա): 1799–1861-ին վարձավճարով տրվել է ռուս–ամերիկ. ընկ-յանը: 1867-ին վաճառվել է ԱՄՆ-ին:

ՌՈՒՍԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆ, ռուս-ի գրային համակարգը. ստեղծվել է սլավոն. գրի (*կիրիլիցա*) հիման վրա: Բաղկացած է 33 տառից, որոնցից 20-ը նշանագրում են բաղաձայն, 10-ը՝ ձայնավոր հնչյուններ, ի տառը վանկարար չէ, ъ և ь տառերն ինքնուրույն հնչյուններ չեն նշանագրում: Ռ. ա-ի հիմքի վրա մշակվել են տարբեր լեզուների այբուբենները:

ՌՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՌԳԱ-ին կից (1938–92-ին՝ ԽՍՀՄ Աշխարհագր. ընկ.), հիմնադրվել է 1845-ին: Մեծ ներդրում ունի Ռուսաստանի և այլ երկրների տարածքների ուսումնասիրության գործում: Ունի գիտախորհուրդ և նախագահություն՝ նախագահի գլխավորությամբ (նստավայրը՝ Ս. Պետերբուրգում): Բաժանմունքներ ունի ՌԳ բոլոր սուբյեկտներում: Ռ. ա. ը-յան անունով լ-շղթա է կոչվել (Պ. Կ. *Կոզլով*) Չինաստանում: Նախագահներ՝ Ֆ. Պ. Լիտկե, Պ. Պ. Սեմյոնով-Տյան-Շանսկի, Յ. Մ. Շոկալսկի, Ն. Ի. Վավիլով, Լ. Ս. Բերգ և ուր., 2009-ից՝ Ս. Կ. Շոյգու:

ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿ, Ռուսաստանի ցամաք. զորքը: Հինռուս. պետության ժամանակաշրջանում գոյություն է ունեցել որպես իշխան. և բոյար. դրուժինաներ, քաղաք. և գյուղ. աշխարհազորներ, իսկ կենտրոնացված պետության ժամանակ (XV–XVII դդ.)՝ որպես միասն. զորք: XVII դ-ի վերջ–XVIII դ-ի սկզբին *Պետրոս I* ստեղծել է մշտ. բանակ: 1918-ի սկզբին վերակազմավորվել է՝ վերանվանվելով Կարմիր բանակի: 1946-ի փետր-ից պաշտոնապես կոչվել է Խորհրդ. բանակ: 1991-ի վերջին Խորհրդ. բանակի մեծ մասի հիման վրա ՌԴ ստեղծել է իր՝ Ռ. բ.:

ժամանակակից ռուսական այբուբենը	Տառերի անուն ները	ժամա նակակից ռուսական այբուբենը	Տառերի անուն ները
А а	а	Р р	էր
Б б	բե	С с	էս
В в	վե	Т т	տե
Г г	գե	У у	ու
Д д	դե	Ф ф	էֆ
Е е	ե	Х х	խա
Ё ё	յո	Ц ц	ցե
Ж ж	ժե	Ч ч	չե
З з	զե	Ш ш	շա
И и	ի	Щ щ	շչա
Й й	ի կիսաձայն	Ъ ъ	կոշտու թյան նշան
К к	կա	Ы ы	ը
Л л	էլ	Ь ь	փափկու թյան նշան
М м	էմ		
Н н	էն	Э э	է շրջուն
О о	օ	Ю ю	յու
П п	պե	Я я	յա

Ռուսական այբուբենը

ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐ 1813–14, ռուս. բանակի ռազմ. գործողությունները (պրուս., շվեդ., իսկ 1813-ի օգոստ-ից՝ նաև ավստր. զորքերի հետ) նապոլեոնյան զորքերի դեմ Գերմանիայում և Ֆրանսիայում: 1813-ի արշավանքն ավարտվել է Լայպցիգի ճակատամարտում Նապոլեոնի զորքերի ջախջախմամբ և Գերմանիայի տարածքից նրանց վտարմամբ: 1814-ի մարտի 18(30)-ին դաշնակից զորքերը գրավել են Փարիզը, որից հետո մարտի 25(ապրիլի 6)-ին Նապոլեոն I-ը հեռացվել է գահից:

ՌՈՒՍԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ Ս. Պետերբուրգում (մինչև 1917-ը՝ Ալեքսանդր III կայսեր ռուս. թանգարան), ռուս. արվ-ի ամենախոշոր թանգարանը Ռուսաստանում: Հիմնադրվել է 1895-ին, բացվել՝ 1898-ին Միխայլովյան պալատում (1819–25, ճարտ.՝ Կ. Ի. Ռոսսի, արմ. մասնաշենքը՝ 1914–19, ճարտ.՝ Լ. Ն. Բենուա): Ունի ռուս. կերպարվ-ի և դեկորատիվ արվ-ի հարուստ հավաքածուներ: Համալիրին ընդգրկում է Ստրոգանովյան (1753–56) և Մարմարե (1768–85, ճարտ.՝ Ա. Ռինալդի) պալատները, Միխայլովյան ամրոցը (1797–1801, ճարտ-ներ՝ Վ. Բրեննա, Վ. Ի. Բաժենով), Ամառային այգին (XVIII–XIX դդ.):

ՌՈՒՍԱԿԱՆ ԾԱՆՐԱՔԱՐԲ ձիերի ցեղ, բուծել են XIX դ-ի վերջին և XX դ-ի սկզբին Ռուսաստանում: Միջին բարձր-յան են, զանգվածեղ, դիմացկուն, շարժունակ և աշխատունակ:

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ, միապետ. դասային բազմազգ պետություն 1721– XX դ–ի սկզբին: Ձևավորվել է XV դ–ի վերջ–XVI դ–ի սկզբին Մոսկվայի մեծ իշխանության շուրջը՝ ռուս. հողերի միավորման շնորհիվ կազմավորված Ռուս. կենտրոնացված պետության հիման վրա, որը 1721–ին Պետրոս I Մեծը հայտարարել է կայսրություն: Ռ. կ–յան մեջ մտնում էին՝ XVIII դ–ից Մերձբալթիական, Աջափնյա Ուկրաինան, Բելառուսը, Լեհաստանի մի մասը, Բեսարաբիան, Հս. Կովկասը, XIX դ–ից՝ նաև Ֆինլանդիան, Այսրկովկասը, Ղազախստանը, Միջին Ասիան և Պամիրը: XIX դ–ի վերջին Ռ. կ–յան տարածքը 22,4 մլն *կմ*^{2} էր, բն.՝ 128,2 մլն մարդ (1897): 1917–ի Փետր. հեղ–յունը տապալել է ինքնակալությունը, 1917–ի Հոկտ. հեղ–յան հաղթանակից հետո ձևավորվել է ՌԽՖՍՀ, ապա՝ մյուս խորհրդ. հանրապետությունները, որոնք 1922–ին կամավոր միավորվել են Խորհրդ. Միության մեջ (տես ***Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն***): Ռ. կ–յան տարածքի մեծ մասի վրա 1991–ին կազմավորվել է ***Ռուսաստանի Դաշնությունը***:

ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ 1905–07, Ռուս–ճապոն. պատերազմի հետևանքով երկրում սրված սոցիալ–քաղ. ճգնաժամ. իրադրությունը: Հեղ–յան սկսման ազդանշան է դարձել խաղաղ ցուցարարների գնդակոծումը 1905–ի հունվ. 9–ին («Արյունոտ կիրակի»): Հեղ. ալիքն արագորեն ծավալվել է, ընդգրկել նաև բանակն ու նավատորմը (ապստամբություն «Պոտյոմկին» զրահանավի վրա, Վլադիվոստոկում և այլուր): Հոկտ–ին սկսվել է համառուսաստան. քաղ. գործադուլը, որին մասնակցել է 2 մլն մարդ: Հոկտ. 17–ին հրապարակվել է ցար. մանիֆեստը, որով Նիկոլայ II–ը խոստանում էր գումարել Պետ. դուման և սահմանել ժողովրդավար. ազատություններ: 1906–ին ընտրվել է 1–ին Պետ. դուման: Բուրժուազիան և մտավորականության մեծ մասը բավարարված լինելով ձեռք բերածով՝ հեռացել են հեղ–յունից: Գործադուլներն ու ելույթներն աստիճանաբար նվազել են, սակայն հեղ–յունն ի վերջո պարտություն է կրել (2–րդ Պետ. դումայի ցրումով, 1907):

«ՌՈՒՍԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ» հրատարակչություն, տեղեկատու–հանրագիտ. հրտչ–յուն Մոսկվայում: Հիմնադրվել է 1925–ին: Մինչև 1949–ը և 1959–92–ին՝ «Խորհրդային հանրագիտարան», 1949–59–ին՝ «Խորհրդային մեծ հանրագիտարան»: Հրատարակում է համապարփակ, ճյուղ., տարածաշրջ., կենսագր. հանրագիտարաններ, հանրագիտ. բառարաններ և տեղեկատու այլ հրտ–յուններ: 1926–2010–ին լույս է ընծայել 800 հատոր՝ շուրջ 130 մլն տպաքանակով:

ՌՈՒՍԱԿԱՆ ՈՃ, հոսանք XIX դ–ի ռուս. ճարտ–յան և գեղ. արդ–յան մեջ: Սկզբնավորվել է հինռուս. և ժող. ճարտ–յունից, որը մշակել է ճարտ. Կ. Ա. Տոնը 1830–40–ական թթ–ին: XIX դ–ի կեսերին զարգացել է Ռ. ռ–ի դեմոկրատ. տարբերակը, որտեղ օգտագործվել են ռուս. գյուղ. ճարտ–յան մոտիվներ (Ն. Վ. Նիկիտին, Ի. Պ. Ռոպետ, Վ. Ա. Հարտման): XVII դ–ի 2–րդ կեսի եկեղեց. քարե ճարտ–յան զարդանկար. բնույթն արտահայտված է XIX դ–ի վերջի կառույցներում (Ա. Ն. Պոմերանցև, Վ. Օ. Շերվուդ, Ռ. Ն. Չիչագով):

ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, գիտ. ընկ., 1866–1917–ին Ս. Պետերբուրգում: Հավաքել և հրատարակել է Ռուսաստանի պատմության վերաբերյալ փաստաթղթեր և նյութեր: Հրատարակել է «Ռուսական պատմական ընկերության հավաքածու» (հ. 1–148), «Ռուսական կենսագրական բառարան» (հ. 1–25):

ՌՈՒՍԱԿԱՆ ՍՊԻՏԱԿ ՀԱՎԵՐ, ձվատու ցեղ: Ստեղծվել է ՌԽՖՍՀ կենտր. շրջանների տեղ. և լեգհոռն ցեղի հավերի տրամախաչման միջոցով: Թռչունները լավ կլիմայավարժվում են, հարմարվում ինչպես հատակային, այնպես էլ վանդակային կենսակերպին:

ՌՈՒՍԱԿԱՆ ՎԱՐԳԱՉԻ, թեթև լծկան ձիերի ցեղ: Ստացվել է ՌԽՖՍՀ–ում՝ օռլովյան և ամերիկ. վարգաձիերի վերարտադր. տրամախաչումից 1949–ին: Արժեքավոր տոհմ. և սպորտ. ձիեր են, բուծվում են Կուրսկում, Պոլտավայում, Սարատովում, Սմոլենսկում:

ՌՈՒՍԱԿԱՆ ՔԵՐԾԵ, շների ցեղ քերծենների խմբից: Բուծվել է XIX դ–ի վերջին՝ գայլերի որսի և տարբեր գազանների որսահալածման համար: Նրբագեղ, նեղամարմին շուն է՝ նեղ երկար գլխով, մկանուտ կորացած մեջքով և խիստ ներս քաշված փորով: Աշխույժ է, ուժեղ, անվախ, գազանների հանդեպ՝ կատաղի:

ՌՈՒՍ–ԱՄԵՐԻԿՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, ռուս. առևտր. միավորում «Ռուսական Ամերիկայի» յուրացման համար 1799–1868–ին: Ռուս. կառ–յան աջակցությամբ հիմնադրել է մի շարք բնակավայրեր, կազմակերպել 25 արշավախումբ (15–ը՝ շուրջերկրյա): Լուծարվել է Հս. Ամերիկայի ռուս. տիրույթները ԱՄՆ–ին վաճառելուց հետո:

ՌՈՒՍ–ԱՄԵՐԻԿՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 1867, կնքվել է մարտի 30–ին Վաշինգտոնում: ԱՄՆ 7200 հզ. դոլարով Ռուսաստանից գնել է Ալյասկան և Ալեության կղզիները:

ՌՈՒՍԱՆՈՎ, Անատոլի Իվանովիչ (ծ. 1932), ռուս ֆիզքիմիկոս: ՌԳԱ ակադ. (1991): ՌԴ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1999): Աշխ–ները վերաբերում են մակերևութ. երևույթների և դիսպերս համակարգերի ֆիզքիմիային (առաջարկել է ադսորբցիայի հավասարում պինդ մակերևույթների համար):

ԽՍՀՄ Պետ. (1981) և ՌԴ ԳԱ Դ. Ի. Մենդելեևի անվ. (2004) մրց–ներ:

ՌՈՒՍԱՆՈՎ, Վլադիմիր Ալեքսանդրովիչ (1875–1913), ռուս բևեռախույզ: 1907–11–ին կատարել է մի քանի գիտարշավ Նոր Երկիր կղզում: 1912–ին ղեկավարել է գիտարշավ «Վերկուլես» նավով, անհետ կորել է: Հետքերը գտել են Կարայի ծովի կղզիներում 1934–ին:

ՌՈՒՍԱՍՏԱՆ, Ռուսաստանի Դաշնություն (ՌԴ), պետություն Արլ. Եվրոպայում և Հս. Ասիայում: Սահմանակից է 14 երկրի: Տարածքը՝ 17,1 մլն *կմ*^{2}, բն.՝ 146,5 մլն (2016): Մայրաքաղաքը՝ ***Մոսկվա***: Պետ. լեզուն՝ ռուս.: Կառավարման ձևը՝ նախագահահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը (Դաշն. ժողով): Կազմված է դաշնության 81 սուբյեկտից (46 մարզ, 22 հանրապետություն, 9 երկրամաս, 3 դաշն. նշանակության քաղաք, 4 ԻՕ, 1 ԻՄ): Ունի 1099 քաղաք, 1318 քտա: Հավատացյալների մեծ մասը քրիստոնյա ուղղափառ է, կան նաև մահմեդականներ և այլ դավանանքի հետևորդներ: ՌԴ ժողդ–ներին երաշխավորվում է մայրենի լեզվի պաշտպ–յուն: Անդամակցում է ՄԱԿ–ին, ԱՊՀ–ին, ԵԱՀԿ–ին, ԵԱՏՄ–ին, ՀԱՊԿ–ին ևն: Անցումային տնտ–յամբ երկիր է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 11,5 հզ. ԱՄՆ դոլար է (2013): Արտահանում է նավթ ու նավթամթերք, բնական գազ, փայտանյութ, մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, սպառող. ապրանքներ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, մետաղներ, տեքստիլ, քիմիկատներ, գյուղմթերք ևն: Դրամ. միավորը՝ ռուբլի:

Հինռուս. պետությունը կազմավորվել է IX դ–ում: 988–ին քրիստոնեությունն ընդունվել է որպես պետ. կրոն: XIII դ–ում ռուս. Կամա–Վոլգյան Բուլղարիան ենթարկվել է թաթար–մոնղ. արշավանքներին, իսկ Նովգորոդի և Պսկովի երկրամասերը՝ շվեդ. և գերմ. ասպետների հարձակումներին: Շուրջ 250 տարի տևած մոնղ–թաթար. լուծը թոթափվել է ռուս. իշխանությունների համատեղ ուժերով՝ Կուլիկովյան ճակատամարտում (1380–ին) տարած հաղթանակի շնորհիվ: XIV–XVI դդ–ում Մոսկվայի շուրջն ստեղծվել է ռուս. կենտրոնացված պետությունը՝ Մոսկվայի մեծ իշխանությունը, որը ներառում էր Հս–արլ. և Հս–արմ. Ռուսիայի տարածքները: XVII դ–ի սկզբին ռուսները հետ են մղել երկիր ներխուժած ***Ռեչ Պոսպոլիտայի*** և ***Շվեդիայի*** զորքերը, իսկ նույն դարի կեսերին Ռ–ի կազմի մեջ է մտել ***Ուկրաինան***: XVII–XVIII դդ. հայտնի են կազակա–գյուղաց. զանգված. ապստամբություններով, որոնցից ամենամեծը Ե. ***Պուգաչովի*** գլխավորած ապստամբությունն էր (1773–75): XVII դ–ի վերջը և XVIII դ–ի առաջին քառորդը նշանավորվել են ***Պետրոս I*** կայսեր բարեփոխություններով: Հս. պատերազմում (1700–21) հաղթելով շվեդ. զորքերին՝ Ռ. ապահովել է ելք դեպի Բալթիկ ծով: XVI–XIX դդ–ում Հյուսիսի, Պովոլժիեի, Ուրալի, Սիբիրի, Հեռավոր Արևելքի տարածքների միացման և մի շարք ոչ ռուս ժողդ–ների միավորման միջոցով կազմավորվել է բազմազգ Ռուս. կայսրությունը: 1812–ի Հայրեն. պատերազմում Ռ. ջախջախել է Նապոլեոնի բանակը: 1861–ին անցկացված գյուղաց. բարեփոխման արդյունքում հիմնականում վերացվել է ճորտատիր. իրավունքը: XIX դ–ի վերջ–XX դ–ի սկզբին երկրում կազմավորվել են քաղ. կուս–յուններ: 1904–05–ի ռուս–ճապն. պատերազմում կրած պարտությունը սրել է իրավիճակը երկրում և հանգեցրել 1905–07–ի հեղ–յանը, որի հետևանքով Ռ. դարձել է հանրապետություն, հիմնադրվել է խորհրդարանը՝ Պետ. դուման: Ռ. ԱՀՊ–ին մասնակցել է ***Անտանտի*** կազմում: 1917–ի Փետր. հեղ–յամբ երկրում տապալվել է ինքնակալությունը, և 1917–ի սեպտ. 1 (14)–ին Ռ. դարձել է հանրապետություն: 1917–ի հոկտ. 25–ին տեղի է ունեցել ***Հոկտեմբերյան հեղափոխությունը***, և Ռ–ում Վ. Ի. Լենինի գլխավորությամբ հռչակվել է Բանվորների, զինվորների ու գյուղացիների պատգմ–ների խորհուրդների իշխանություն: 1918–ին կազմավորվել է Ռ–ի Խորհրդ. Ֆեդերատիվ Սոց. Հանրապետությունը (ՌԽՖՍՀ): 1922–ին ՌԽՖՍՀ–ի, Ուկր. ԽՍՀ–ի, ԲԽՍՀ–ի և Անդրֆեդերացիայի միավորմամբ կազմավորվել է

Խորհրդ. Սոց. Հանրապետությունների Միությունը (ԽՍՀՄ)։ ՀՄՊ–ի տարիներին երկրի տարածքի զգալի մասը գրավել են Գերմանիայի և նրա դաշնակիցների զորքերը, որոնք ջախջախվել և դուրս են շպրտվել ԽՍՀՄ ժողդ–ների միասն. ուժերով։ 1980–ական թթ–ի կեսերին ԽՍՀՄ–ում հռչակված Վերակառուցման քաղ–յան տարիներին երկրում խորացել է տնտ. լճացումը, և այն հայտնվել է փլուզման եզրին։ 1990–ի հունիսի 12–ին Ռ. հռչակել է իր անկախությունը։ 1991–ին հիմնվել է ՌԴ նախագահի պաշտոնը, և առաջին նախագահ է ընտրվել Բ. Ն. ***Ելցինը***։ Նույն տարում Ռ–ի, Բելառուսի և Ուկրաինայի ղեկ–ները ստորագրել են ***Բելովեժյան համաձայնագիրը***, որով դադարեցվել է ԽՍՀՄ–ի գոյությունը, հայտարարվել է նոր միջպետ. միավորման՝ ԱՊՀ–ի կազմավորման մասին։ 1994–ին Չեչնիայում բռնկել է անջատող. պատերազմ, որն ավարտվել է ռուս. հակաահաբեկչ. ուժերի հաղթանակով (2000)։ 1993–ին ընդունվել է նոր սահմանադրություն, և անցկացվել են Դաշն. ժողովի առաջին ընտրությունները։ 1999–ի դեկտ. 31–ին հրաժարական է տվել նախագահ Բ. Ն. Ելցինը։ 2000–08–ին և 2012–ից երկրի նախագահը Վ. Վ. ***Պուտինն*** է, 2008–12–ին՝ Դ. Ա. ***Մեդվեդևը***։ Երկրում 2000–ական թթ–ից իշխող առաջատար ուժը Միասն. Ռուսաստան կուս–յունն է (նախագահ՝ Դ. Ա. Մեդվեդև)։ 2014–ին հանրաքվեով Ուկրաինայից անջատվել և Ռ–ին են միացել Ղրիմի ԻՀ–ն ու Սևաստոպոլ ք–ը։

Հայ–ռուս. պատմ. առնչություններն սկզբնավորվել են X–XI դդ–ում, երբ հայկ. առաջին համայնքներն են ստեղծվել վոլգյան բուլղարների տարածքում և ապա՝ Հին Ռուսիայի մայրաքաղաք Կիևում։ Հետագա դարերի ընթացքում հայկ. գաղութներ են հիմնվել Մոսկվայում (XV դ.), Աստրախանում, Հս. Կովկասում, Ս. Պետերբուրգում (XVIII դ.)։ 1778–ին Ղրիմի հայերը կայսրուհի Եկատերինա II–ի հրամանագրով Ա. Վ. Սուվորովի գլխավորությամբ վերաբնակեցվել են Դոնի գետաբերանի տարածքում, որտեղ նրանք հիմնադրել են ***Նոր Նախիջևան*** ք. (այժմ՝ Դոնի Ռոստովի շրջագծում)։ XIX դ–ի 1–ին կեսին հայկ. խոշոր գաղութներ են կազմավորվել Հս. Կովկասում՝ Ստավրոպոլում, Եկատերինոդարում (Կրասնոդար), Վլադիկավկազում, Սև ծովի կովկաս. ափի քաղաքներում և գյուղերում։ Հայերը հիմնադրել են ***Արմավիր*** ք.։ XIX դ–ում Ռ–ի պետ. կառույցներում, ռուս. ԶՈՒԽ–ում ղեկ. պաշտոններ են զբաղեցրել մեծ թվով հայեր (Ռ–ի ներքին գործերի նախարար Միքայել ***Լորիս–Մելիքովը***, լուսավորության նախարար Իվան ***Դելյանովը***, զորավարներ Դմիտրի ***Ախշարումովը***, Իվան ***Լազարևը***, Արշակ ***Տեր–Ղուկասովը***, ծովակալ Լազար ***Սերեբրյակովը*** (Արծաթագործյան) և ուր.)։ Լազարյանները 1815–ին Մոսկվայում հիմնադրել են ճեմարան, որը դարձել է Ռ–ի ուսումնագիտ. կենտրոններից։ Ռ–ի հայ համայնքն ունեցել է և ունի հսկայական մտավոր ու տնտ. ներուժ. նրանց մեջ կան բազմաթիվ պետ. գիտ. դ–ր–ներ, հայտնի պետ. գործիչներ, բիզնեսմեններ, բժիշկներ, դերասաններ, նկարիչներ, մարզիկներ, որոնք զգալիորեն նպաստել են գիտ–յան, մշակույթի, հաս. կյանքի, պետականության և բազմաթիվ այլ ոլորտների զարգացմանը։

Ռուս–հայկ. գր. կապերն սկիզբ են առել X–XI դդ–ում։ Հայ. է թարգմանվել «Բորիսի եւ Գլեբի վարքը» (XIII դ.), որը զետեղվել է Հայսմավուրքում, հին սլավոն.՝ Սբ Գրիգոր Լուսավորչի վարքը։ 1781–ին Գ. Խալդարյանը հայկ. տպարան է հիմնադրել Ս. Պետերբուրգում։ 1786–ին Վ. Վահանովի թարգմ–յամբ ռուս. է հրատարակվել «Յորդորակը» և Մովսես Խորենացու «Հայոց պատմութեան» վերջին մասը, 1799–ին՝ Հովսեփ Արղությանի «Հայոց եկեղեցու քրիստոնէական հաւատի դաւանանքը» (Մ. Մ. Սպերանսկու խմբագրությամբ), 1788–ին հրատարակված Գ. Խալդարյանի «Գիրք որ կոչի շառաւիղ լեզուագիտութեան» հայ–ռուս. բառարանի վերջում զետեղվել է Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ»–ի ռուս. թարգմ–յունը։ Ռ–ում ապրել և գործել են հայ մտավորականության երևելի դեմքեր՝ բանաստեղծ Վահան Տերյանը, գրող Մարիետա Շահինյանը, կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը, թատեր. գործիչներ Եվգենի Վախթանգովը և Ռուբեն Սիմոնովը, դիրիժոր Ալեքսանդր Մելիք–Փաշայանը, երգիչներ Զարա Դոլուխանովան, Պավել Լիսիցյանը, պետ. գործիչներ Անաստաս Միկոյանը, Հովհաննես Թևոսյանը, մարշալներ Հովհաննես Բաղրամյանը, Համազասպ Բաբաջանյանը, Սերգեյ Խուդյակովը (Արմենակ Խանփերյանց), Սերգեյ Ագանովը, ծովակալ Հովհաննես Իսակովը, ֆիզիոլոգ Լևոն Օրբելին, պատմաբան Հովսեփ Օրբելին, քիմիկոսներ Իվան Կնունյանցը, Նիկողոս Ենիկոլոփյանը, բուսաբան Արմեն Թախտաջյանը, ավիակոնստրուկտոր Արտեմ Միկոյանը, ճարտարագետ Սամվել Քոչարյանը, տնտեսագետ Աբել Աղանբեգյանը, շախմատի աշխարհի չեմպիոն Տիգրան Պետրոսյանը և ուր.։

1980–ական թթ–ի վերջից սկսվել է Ռ–ի հայ համայնքների հաս. և մշակութ. կյանքի վերելքը։ Ստեղծվել են հայ մշակութ. և երիտասարդ. ընկ–ներ («Բարև Ձեզ», «Հյուսիսափայլ», «Մաշտոց», «Վասպուրական»), կենտրոններ ոչ միայն հինհայկ. (Մոսկվա, Ս. Պետերբուրգ, Կրասնոդար, Դոնի Ռոստով, Ստավրոպոլ ևն), այլև նոր համայնքներում (Կրասնոյարսկ, Իրկուտսկ, Չիտա, Վլադիվոստոկ ևն)։ Ս. Պետերբուրգի և Մոսկվայի հայ համայնքներին վերադարձվել են հայկ. եկեղեցիները, մի շարք տեղերում կառուցվել են նոր եկեղեցիներ։ Ռ–ի տարածքում այժմ գործում են ՀԱԵ՝ Նոր Նախիջևանի ու Ռ–ի (կենտրոնը՝ Մոսկվա) և Հվ. Ռ–ի (կենտրոնը՝ Կրասնոդար) թեմերը՝ գործող 10 եկեղեցիներով։ 2000–ին ստեղծվել են «Մոսկվայի հայ համայնք» Ռ–ի հայերի միությունը (նախագահ՝ Արա Աբրահամյան), 2001–ին՝ Հայերի համաշխ. կոնգրես կազմ–յունները։ Ռ–ում ներկայում ապրում է շուրջ 2,2 (այլ տվյալով՝ շուրջ 3) մլն հայ, հիմնականում՝ Մոսկվայում, Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում, Եկատերինբուրգում, Հս. Օսիայում, Սոչիում, Դոնի Ռոստովում, Ս. Պետերբուրգում, Նովոռոսիյսկում, Մոսկվայի մարզում, Յակուտիայում, Ղրիմում, Արմավիրում, Վոլգոգրադում, Կալինինգրադում ևն։ ՌԴ Պետ. դուման 1995–ին ընդունել է Օսմ. կայսրությունում Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև։ Տես նաև ***Նոր Նախիջևանի, Մոսկվայի, Ս. Պետերբուրգի հայկական տպագրություններ***։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Մ. Ե. Սալտիկով–Շչեդրինի անվան, Ռուսաստանի հնագույն գրադարաններից։ Հիմնադրվել է 1795–ին Ս. Պետերբուրգում՝ ***Եկատերինա II***–ի նախաձեռնությամբ՝ որպես Կայսեր. գրադարան (գործել է 1814–ից)։ 1810–ից ստացել է տպագիր արտադրանքի պարտադիր օրինակ։ 1845–61–ին գրադարանի կազմում է եղել Ռումյանցևի թանգարանը, որի հիման վրա 1828–ին ստեղծվել է ***Ռուսաստանի պետական գրադարանը*** (Մոսկվա)։ Ռ. ա. գ. ունի շուրջ 34 մլն գրադարան. միավոր (այդ թվում՝ հազվագյուտ ձեռագրեր և բացառիկ հրտ–յունների հարուստ հավաքածուներ)։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ (ՌԲԳԱ), ստեղծվել է 1992–ին Մոսկվայում՝ ԽՍՀՄ ԲԳԱ–ի (հիմն.՝ 1944) հիմքի վրա։ 2016–ին ուներ շուրջ 220 ակադ., 230 թղթ. և 100 արտ. անդամներ, 3 ճյուղ. և 2 տարածաշրջ. բաժանմունքներ, ավելի քան 70 ԳՀՀ։ ՌԲԳԱ անդամ են նաև մի շարք անվանի հայ բժիշկ–գիտնականներ։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ (ՌԲՆԳԱ), ռուս. գիտ. ստեղծագործ. միություն, հաս. ԳԱ։ Հիմնադրվել է 1990–ին Մոսկվայում։ Ներառում է 24 կենտր., ավելի քան 100 տարածաշրջ. և թեմատիկ բաժանմունքներ, հետազոտ. կենտրոններ։ 1997–ից գործում է ՌԲՆԳԱ հայկ. մասնաճյուղը։ 2002–ից, որպես հաս. կազմ–յուն, ՄՄԿ–ի Տնտ. և սոցիալ. խորհրդում ունի խորհրդակց. կարգավիճակ։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԱԿԱԴԵՄԻԱ, ՌԴ ստեղծագործ–գիտ. հաստատություն։ Հիմնադրվել է 1992–ին Մոսկվայում՝ ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի (ստեղծվել է 1947–ին) վերակազմավորմամբ, ընդգրկվել են նաև Ս. Պետերբուրգի և Համառուսաստան. (հիմն.՝ 1932) գեղարվ–ի ակադ–ները։ Ունի մասնաճյուղեր Ուրալում, Սիբիրում, Հեռավոր Արևելքում (Կրասնոյարսկ), ՌԳԱ կազմում է նաև կերպարվ–ի տեսության և պատմության ԳՀԻ–ն։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ (ՌԳԱ), հիմնադրվել է 1991–ին (ԽՍՀՄ ԳԱ՝ 1925–91–ին՝ 1724–ին ստեղծված Ս. Պետերբուրգի ԳԱ, 1917–25–ին՝ Ռուսաստանի ԳԱ հենքի վրա)։ 1934–ից՝ Մոսկվայում։ Ինքնակառավարվող գիտ. կազմ–յուն է. ներառում է ԽՍՀՄ ԳԱ ակադ–ներին, ինչպես նաև նորընտիր անդամներին։ 2017–ին ուներ 928 իսկական, 1148 թղթ. անդամ։ Ունի 11 բաժանմունք՝ մաթ–ի, ֆիզիկայի, էներգետիկայի, մեքենագիտ–յան, մեխանիկայի և կառավարման շարժընթացների, քիմիայի և նյութագիտ–յան, կենսբ–յան, երկրի մասին գիտ–յունների, նանո– և տեղեկատվ. տեխնոլոգիաների, ֆիզիոլոգիայի և հիմնարար բժշկագիտ–յան, գլոբալ հիմնահարցերի և միջազգ. հարաբերությունների, ինչպես նաև տարածաշրջ. բաժանմունքներ (Սիբիրի, Ուրալի, Հեռավոր արլ.) և 15 գիտ. կենտրոն (470 գիտ. հաստատություն), նախագահությանը կից խորհուրդներ, միջգերատեսչ. խորհուրդ, ԳՀ նավատորմ։ Գիտ. աշխների համար շնորհում է մեդալներ և մրց–ներ։ ՌԳԱ վերջին նախագահն էր Վ. Ե. ***Ֆորտովը***, 2017–ից՝ Վ. Վ. Կոզլովը (պաշտոնակատար)։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ, Ռուսաստանի բանկ: Հիմնադրվել է 1990–ին Մոսկվայում՝ ԽՍՀՄ պետ. բանկի (հիմն. 1923) հիմքի վրա: Կարգավորում է պետության դրամավարկ. համակարգը, պաշտոն. արժութ. պաշարները, շրջանառվող դրամի քանակը, համակարգում է ազգ. բանկերի գործունեությունը, իրականացնում արժութ. հսկողություն, միջազգ. հաշվարկներ, ունի բանկ. տոմսերի թողարկման մենաշնորհ:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎ (ՌԴՊԱ), հիմնադրվել է 1920–ին Մոսկվայում՝ որպես ՌԽՖՍՀ պետ. արխիվ (1992–ից՝ ՌԴՊԱ): Երկրի խոշորագույն դաշն. արխիվն է, որտեղ պահվում է Ռուսաստանի XIX–XXI դդ–ի պատմության վերաբերյալ մոտ 6 մլն գործ:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀՈՒՇԱԿԱԳԻՐ, խորհրդ. պետության 1–ին ակտերից: Հաստատվել է ՌԽՖՍՀ ԺԿԻՍ–ի 1917–ի նոյեմբ. 2(15)–ի դեկրետով: Հռչակվել են Լենինյան ազգ. քաղ–յան սկզբունքները՝ 1. Ռուսաստանի ժողդ–ների իրավահավասարություն և անկախություն, 2. ազատ ինքնորոշման իրավունք՝ ընդհուպ մինչև անջատվելն ու անկախ պետություն ստեղծելը, 3. ազգ., ազգ–կրոն. բոլոր տեսակի արտոնությունների ու սահմանափակումների վերացում, 4. Ռուսաստանի տարածքում ապրող ազգ. փոքրամասնությունների ու էթնիկ. խմբերի ազատ զարգացում:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԼԻԲԵՐԱԼ–ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՌԼԴԿ), աջակենտր. կուս–յուն ՌԴ–ում: Հիմնադրվել է 1990–ին՝ որպես ԽՍՀՄ Լիբերալ–դեմոկրատ. կուս–յուն (1992–ից՝ ՌԼԴԿ): Նախագահ՝ Վ. Վ. *Ժիրինովսկի*: Սահմանադր. մեթոդներով սոցիալ–իրավ., լիբերալ–ժողովրդավար. միացյալ պետության կառուցման կողմնակից է: 1993–ից ընտրվել է Պետ. դումայի բոլոր գումարումներում:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԵ, Հայաստանի տարածքում գործող բոլշևիկյան կազմ–յունների 1–ին համահայաստանյան կուս. ղեկ. կենտրոնը՝ «Արմենկոմ»: Կազմավորվել է 1919–ի սեպտ–ին Երևանում՝ ՌԿ(բ)Կ Հայաստանի կազմ–յունների 1–ին համահայաստանյան խորհրդակցության որոշմամբ: Գործունեությունը դադարեցրել է 1920–ին՝ իր նախաձեռնած Մայիսյան ապստամբության անհաջողությունից հետո:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ (ՌԿԱ), ստեղծվել է 1992–ին Մոսկվայում՝ ԽՍՀՄ ՄԳԱ–ի (հիմն.՝ 1943) հիմքի վրա: 2016–ին ուներ ավելի քան 130 ակադ. և 160 թղթ., 70 արտ., 15 պատվ. անդամներ, 5 ճյուղ. և 4 տարածաշրջ. բաժանմունքներ: ՌԿԱ անդամ են եղել նաև մի շարք անվանի հայ մանկավարժ–գիտնականներ:

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱԲԱՎԻ ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ», սպիտակգվարդ. զորքերը Քաղաքաց. պատերազմի ժամանակ: Ստեղծվել է 1919–ի հունվ–ին՝ գեն–լեյտ. Ա. Ի. *Դենիկինի* հրամանատարությամբ: 1919–ի հոկտ–ին «Ռ. ի. զ. ու.»–ի թիվը հասել է 270 հզ–ի: 1919–20–ին ջախջախվել են, իսկ մնացորդները նահանջել են դեպի Ղրիմ, որտեղ նրանց հիման վրա գեն–լեյտ. Պ. Ն. *Վրանգելն* ստեղծել է «Ռուսական բանակը»:

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» (ռուս. հապավումը՝ ՌՈՒՏԱ), Խորհրդ. պետության գլխ. տեղեկատվ. մարմինը 1918–25–ին: Ձևավորվել է Պետրոգրադի հեռագր. գործակալության և ՌԽՖՍՀ ժողկոմխորհի մամլո բյուրոյի միավորումով: 1925–ից՝ Խորհրդ. Միության հեռագր. գործակալության՝ ՏԱՍՍ–ի ստեղծումից հետո՝ ՌԽՖՍՀ–ի տեղեկատվ. մարմինը: 1935–ին լուծարվել է: ՀԽՍՀ–ում գործել են ՌՈՒՏԱ–ի տարածաշրջ. բաժանմունքներ՝ Արմենկավոռոստա, Արմենռոստա (1972–ից՝ *Արմենպրես*):

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԱ, ստեղծվել է 1992–ին Մոսկվայում՝ ԽՍՀՄ ճարտ–յան և շին–յան ու ճարտ–յան ԳԱ–ների հիմքի վրա՝ երկուսի միավորմամբ: 2016–ին ուներ 60 ակադ. և 115 թղթ., 70 պատվ., 75 արտ. անդամներ, 3 ճյուղ. և 5 տարածաշրջ. բաժանմունքներ, 5 ԳՀԻ, 15 գիտաստեղծագործ. կենտրոններ: ՌՃՇԳԱ անդամ են եղել նաև մի շարք հայ ճանաչված ճարտ–ներ ու շինարարներ:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԵԾ ԹԱՏՐՈՆ պետական ակադեմիական (1919–ից), հիմնադրվել է 1776–ին Մոսկվայում: Բեմադրվել են օտար և ռուս. կոմպոզիտորների (Մ. Ի. Գլինկա, Պ. Ի. Չայկովսկի, Ն. Ա. Ռիմսկի–Կորսակով և ուր.) օպերաներ: XX դ–ի սկզբից համաշխ. ճանաչման են արժանացել ռուս. վոկալի (Ֆ. Ի. Շալյապին, Ա. Վ. Նեժդանովա և ուր.) և բալետի (Ե. Վ. Գելցեր, Ա. Ա. Գորսկի և ուր.) դպրոցները: Հայտնի են նաև երգիչներ Ի. Մ. Կոզլովսկին, Մ. Յ. Լեմեշևը, Պ. Լիսիցյանը, Ի. Կ. Արխիպովան, Գ. Պ. Վիշնևսկայան, Ե. Վ. Օբրազցովան, բալետի արտիստներ Գ. Ս. Ուլանովան, Օ. Վ. Լեպեշինսկայան, Ե. Ս. Մաքսիմովան, Վ. Վ. Վասիլևը, Մ. Մ. Պլիսեցկայան, բալետմայստերներ Լ. Մ. Լավրովսկին, Յ. Ն. Գրիգորովիչը, դիրիժորներ Ն. Ս. Գոլովանովը, Ա. Շ. Մելիք–Փաշաևը, Ե. Ֆ. Սվետլանովը և ուր.: Կից գործում են Նոր բեմը (2002–ից) և թանգարանը:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, Ռուսաստանի ամենախոշոր գիտ. գրադարանը (Մոսկվա): Ստեղծվել է 1939–ին՝ Չերտկովի գրադարանի (հիմն.՝ 1863) հիման վրա: 1887–1938–ին՝ Պատմության թանգարանի գրադարան: Գրադարան. ֆոնդը՝ ավելի քան 6 մլն միավոր:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, **Պետրովսկի գյուղատնտեսական ակադեմիա**, Ռուսաստանի գղտ. առաջավոր բուհերից: Հիմնադրվել է 1865–ին մերձմոսկովյան Պետրովսկ–Ռազումովսկ գ–ում (այժմ՝ Մոսկվայի շրջագծում)՝ որպես հողագործության և անտառային ակադ.: 1923–ից՝ Կ. Ա. Տիմիրյազևի անվ., 2005–ից՝ Ռ. պ. ա. հ.:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ Ն. Ի. ՊԻՐՈԳՈՎԻ ԱՆՎԱՆ, ազգ. հետազոտ. բուհ: Ստեղծվել է 1918–ին՝ *Կանանց բարձրագույն դասընթացների* հիման վրա: Մինչ 1930–ը՝ Մոսկվայի 2–րդ համալսարան, 1930–91–ին՝ Մոսկվայի 2–րդ պետ. բժշկ. ինստ.: 2015–ին ուներ ավելի քան 9 հզ. ուսանող:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ՌԴ ազգ. գրադարանը, ամենախոշորը՝ երկրում: Հիմնադրվել է 1828–ին Մոսկվայում՝ Ռումյանցևի թանգարանի հիման վրա: 1925–92–ին՝ ԽՍՀՄ պետ. գրադարան Վ. Ի. Լենինի անվ.: Ունի ավելի քան 43 մլն գրադարան. միավոր (այդ թվում՝ հազվագյուտ ձեռագրեր և բացառիկ հրտ–յուններ):

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ Ա. Ի. Գերցենի անվան, հիմնադրվել է 1918–ին Ս. Պետերբուրգում (կոչվել է Պետրոգրադի 3–րդ մանկավարժ. ինստ.): Մինչև 1991–ը՝ ինստ.: 2015–ին ուներ ավելի քան 17 հզ. ուսանող:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԽԻՎ (ներկայի անվանումը՝ 1992–ից՝ ՌՊՊԱ), հիմնադրվել է Ռուս. կայսրության XVIII դ.–1917–ի փաստաթղթերի արխիվի հիման վրա Ս. Պետերբուրգում 1941–ին: Պահպանում է Ռուս. կայսրության պետ. բարձրագույն մարմինների և իշխանությունների, նաև ՀԿ–ների, գիտ., կրթ., մշակութ. և այլ հաստատությունների փաստաթղթեր:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԾՈՎԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄ, ստեղծվել է XVII դ–ի վերջին՝ *Պետրոս I*–ի օրոք՝ Ազովի ծովում Թուրքիայի դեմ ռազմ. գործողությունների համար: Հս. պատերազմի (1700–21) ժամանակ ստեղծվել է Բալթ., 1783–ին՝ Սևծով. նավատորմը: XVIII դ–ի 2–րդ կես–XIX դ–ի սկզբին ռուս. ՌԾՆ ռազմ. նավերի թվով աշխարհում 3–րդն էր: 1918–ի հունվ–ին վերակազմավորվել է. ստեղծվել է խորհրդ. ՌԾՆ: 1991–ի վերջին խորհրդ. ՌԾՆ–ի մեծ մասի հիման վրա ստեղծվել է ՌԴ ՌԾՆ:

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» (ԻՏԱՌ–ՏԱՍՍ), կենտր. տեղեկատվ. պետ. ծառայություն: Ստեղծվել է 1992–ին՝ ՏԱՍՍ–ի (ռուս., ԽՍՀՄ հեռագր. գործակալություն, հիմն.՝ 1925) հիմքի վրա: Տեղեկատվություն է տրամադրում ՌԴ և արտերկրի պարբ–ներին, ռադիո–հեռուստատեսություններին, կառավար. հաստատություններին և այլ կազմ–յունների:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԻՄԻԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ Դ. Ի. Մենդելեևի անվան, ստեղծվել է 1918–ին՝ Մոսկվայի արդ. ուսումնարանի (հիմն.՝ 1898) հիմքի վրա: Մինչև 1920–ը՝ Մոսկվայի քիմ. տեխնիկում, մինչև 1992–ը՝ Մոսկվայի քիմիա–տեխնոլոգ. ինստ.:

ՌՈՒՍ–ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԵՐ, Բալկանյան հարցերի վերաբերյալ, 1. **1897**, գաղտնի. կնքվել է Բալկաններում ստատուս քվոյի պահպանման վերաբերյալ՝ նոտաների փոխանակմամբ: 2. **1907**, պատմ. Մակեդոնիա մարզում բարենորոգումների և դրանց իրականացման ժամկետը մինչև 1914–ը երկարաձգման վերաբերյալ: 3. **1908**, բանավոր. կնքել են 2 երկրների ԱԳ նախարարները Բուխլաու ամրոցում (Չեխիա): Ռուսաստանը համաձայնել է Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցմանն Ավստրիային, պայմանով, որ Ավստրիան համաձայնի Բալկանյան հարցի վերաբերյալ եվրոպ. համաժողովի հրավիրմանը և Ռուսաստանի ռազմ. նավերի՝ սևծովյան նեղուցներով անարգել նավարկմանը: Ավստրիան չի բավարարել Ռուսաստանի պահանջները, որի հետևանքով առաջացել է 1908–09–ի Բոսնիական ճգնաժամը:

ՌՈՒՍԵ, ք–նվինգստո Բուլղարիայի հս–ում, Դանուբի ափին: Բն.՝ 157,3 հզ. (2010): Հիմնադրել են հռոմեացիները I դ–ում:

Մետակայքում են միջնադար. Չերվեն ք–ի ավերակները, Իվանովո գ–ի մոտ՝ XIII–XIV դդ–ի ժայռափոր եկեղեցիներ:

ՌՈՒՍԵԼ (Roussel) Ալբեր (1869–1937), ֆրանսիացի կոմպոզիտոր: 1935–ից՝ ֆրանս. երաժշտ. դաշնության նախագահը: Հեղինակ է «Պադմավատի» (1918) օպերա–բալետի, «Բաքոս և Արիադնա» (1930) բալետի և այլ գործերի:

ՌՈՒՍԵՐԵՆ, ՌԴ–ի պետ. լեզուն: Բելառուսի Հանրապետության պետ. լեզուներից, Ղազախստանի, Ղրղզստանի, Աբխազիայի, Հվ. Օսիայի, Մերձդնեստրի Մոլդ. Հանրապետության, նաև ՄԱԿ–ի պաշտոն. լեզուներից: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի սլավոն. ճյուղին: Գրի հիմքում ռուս. այբուբենն է. սերում է կիրիլիցայից:

ՌՈՒՍԹԱՎԻ, ք. (1948–ից) Վրաստանում՝ Կուր գետի ափին: Բն.՝ 122 հզ. (2010): Հիմնադրվել է մետաղաձուլ. գործարանի շուրջ: Ռ–ի մոտակայքում է Թբիլիսյան ՊՇԷԿ–ը:

ՌՈՒՍ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ 1914 հայկական բարենորոգումների վերաբերյալ, ստորագրել են հունվ. 26(փետր. 8)–ին Կ. Պոլսում ռուս. կայսեր. հավատարմատար Կ. Գուլկևիչը և Օսմանյան կայսրության ԱԳ նախարար, մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան՝ ավելի քան 1 տարի տևած բանակցություններից հետո (տես *Հայկական բարենորոգումներ 1912–14*): Համաձայնագրով Արմ. Հայաստանի 7 վիլայեթներից կազմվում էր 2 հատված [1–ինն ընդգրկում էր Էրզրումի, Տրապիզոնի և Սեբաստիայի (Սվազ), 2–րդը՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթները], որոնց կառավարումը հանձնվում էր երկու օտարերկրացի Ընդհանուր տեսուչների՝ հոլանդացի դիվանագետ Վեստենենկին և նորվեգացի գնդ. Հոֆին: Վերջիններս դեռ նոր էին անցել իրենց պարտականությունների կատարմանը (բավական սահմանափակված իրավունքներով), երբ 1914–ի օգոստ. 1–ին սկսվեց ԱՀՊ, որի հետևանքով համաձայնագրի կետերը չիրականացան:

ՌՈՒՍ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ, 1. **1724**, կնքվել է Կ. Պոլսում՝ ռուս. և թուրք. տիրույթների սահմանազատման վերաբերյալ: Թուրքիան ճանաչել է 1723–ի ռուս–պարսկ. պայմանագրով Ռուսաստանին անցած տարածքները: 2. **1799**, կնքվել է Կ. Պոլսում: Թուրքիան միացել է հակաֆրանս. կոալիցիային:

ՌՈՒՍ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ, 1. **1735–39**, Ռուսաստանը (Ավստրիայի հետ դաշնակցած) պայքարում էր դեպի Սև ծով ելք ունենալու և Ղրիմի թաթարների արշավանքներին վերջ տալու համար: Ռուս. զորքերը Բ. Կ. Մինիխի և Պ. Պ. Լասիի հրամանատարությամբ գրավել են Ազովը, Օչակովը, Խոտինը, Յասսին, Ղրիմը (2 անգամ): Ավարտվել է 1739–ի Բելգրադի հաշտությամբ: 2. **1768–74**, սկսել է Թուրքիան՝ Լեհաստանից ռուս. զորքերի դուրսբերման պահանջի չիրագործումից հետո: Ռուս. զորքերի հաղթանակները Լարգայում և Կագուլայում (հրամ.՝ Պ. Ա. *Ռումյանցև–Զադունայսկի*), թուրք. նավատորմի պարտությունը *Չեսմեի ճակատամարտում* և Ղրիմի գրավումը թուրք. կառ–յանն ստիպել են ստորագրել 1774–ի Քյուչուկ–Կայնարջիի հաշտությունը: 3. **1787–91**, սկսել է Թուրքիան՝ Ղրիմը և այլ տարածքներ վերադարձնելու նպատակով: Ռուս. զորքերի՝ Ա. Վ. Սուվորովի (Կինբուռն, Ֆոկշան, Ռիմնիկ, Իզմայիլ), Գ. Ա. Պոտյոմկինի (Օչակով), Ն. Վ. Ռեպնինի (Մաչինի ճակատամարտ) և ռուս. նավատորմի՝ Ֆ. Ֆ. Ուշակովի (Կերչի ծովամարտ, Տենդրա, Կալիակրիա) հրամանատարությամբ տարած հաղթանակները Թուրքիային ստիպել են ստորագրել 1792–ի Յասսիի հաշտությունը: 4. **1806–12**, սկսել է Թուրքիան՝ Հս. Մերձսևծովյան և Կովկասյան նախկին տիրույթները վերադարձնելու, ինչպես նաև Բալկաններում Ռուսաստանի ազդեցությունն ուժեղացնելու նպատակով: Ռուս. զորքերի հաղթանակների և Մ. Ի. Կուտուզովի դիվանագիտ. հմտությունների շնորհիվ պատերազմն ավարտվել է 1812–ի Բուխարեստի հաշտությամբ: 5. **1828–29**, բռնկվել է 1821–29–ի Հուն. հեղ–յան հետևանքով Օսմ. կայսրությունում սկսված ճգնաժամի պայմաններում: Ռուս. զորքերն Արմ. Հայաստանում նվաճել են Կարսը և Էրզրումը, ջախջախել թուրք. զորքերին Բուլղարիայում և մոտեցել Կ. Պոլսին: Ավարտվել է 1829–ի Ադրիանուպոլսի պայմանագրով: 6. **1877–78**, ծագել է բալկանյան ժողղ–ների ազգ–ազատագր. շարժումների վերելքի և Մերձ. Արևելքում միջազգ. հակասությունների սրման (տես *Արևելյան հարց*) պայմաններում: Բալկանյան ճակատում ռուս. զորքերն ազատագրել են Բուլղարիան, հունվ. 8–ին գրավել Ադրիանուպոլիսը և դուրս եկել Կ. Պոլսի մատույցներ: Կովկասյան ճակատում ռուս. զորքերը գրավել են Բայազետը, Արդահանը, Կարսը և շարժվել դեպի Էրզրում: Պատերազմն ավարտվել է 1878–ի փետր. 19–ի Սան Ստեֆանոյի պայմանագրով, որը Անգլիայի և Ավստրո–Հունգարիայի ճնշմամբ վերանայվել է *Բեռլինի վեհաժողովում* (1878)՝ Ռուսաստանի համար ոչ շահավետ փոփոխություններով, և ճակատագր. եղավ հատկապես հայ ժողղ–ի համար: Պատերազմի արդյունքում թուրք. լծից ազատագրվել են և անկախություն ձեռք բերել Ռումինիան, Բուլղարիան, Սերբիան, Չեռնոգորիան:

ՌՈՒՍԻԱ, **Ռուսական երկիր**, արլ. սլավոնների պետ. կազմավորման (Դնեպրի միջին հոսանքում) անվանումը: XII–XIII դդ–ում «Ռ.» են կոչվել հինռուս. իշխանությունները, հետագայում՝ հինռուս. պետության հս–արլ. հատվածը:

ՌՈՒՍԻՆՅԱՆ Նահապետ Պայազատի (1819–1876), փիլ., հաս. գործիչ: Բժշկագիտ. դ–ր (1851): Հեղինակ է «Ուղղախօսութիւն արդի հայ լեզուին» (1853, պաշտպանել է աշխարհաբարը, փորձել մշակել նրա քերակ–ը), «Դասագիրք փիլիսոփայութեան» (ֆրանս., 1876, հայ.՝ 1879, էմպիրիզմի ու ռացիոնալիզմի միահյողմանիությունը փորձել է հաղթահարել Ի. Կանտի ու Գ. Հեգելի ուսմունքների առանձին գաղափարների համադրմամբ) աշխ–ների: Կազմել է «Բնական տարեցոյց 1872 նահանջ թուին...» (1871–72) երկհատորյակը: Մեծապես նպաստել է արևմտահայերի *Ազգային սահմանադրության* (1860) նախագծի մշակմանը: Թարգմանել է Վ. Հյուգոյի ստեղծագործություններից:

ՌՈՒՍ–ԼԵՀԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ 1654–67, սկսել է Ռուսաստանը՝ Սմոլենսկը, Չեռնիգովը, Բելառուսը վերադարձնելու և Ռուսաստանի ու Ուկրաինայի վերամիացումն ապահովելու նպատակով: 1654–55–ին ռուս. զորքերը ջախջախել են *Ռեչ Պոսպոլիտայի* հիմն. ուժերը, ազատագրել Սմոլենսկինան և Բելառուսի մեծ մասը: 1660–ից առավելությունն անցել է լեհ. զորքերի կողմը: Ավարտվել է Անդրուսովոյի հաշտությամբ:

ՌՈՒՍԼՈ (Rousselot) Ժան Պիեռ (1846–1924), արբա, ֆրանսիացի լեզվաբան: Լեզվար. աշխարհագրության հիմնադիրներից: Դրել է փորձառ. հնչյունաբանության հիմքը: Հիմնադրել է Ֆրանս. բարբառագիտ. ընկ–ը (1893):

ՌՈՒՍԿԱ (Ruska) Էռնստ (1906–1988), գերմանացի ֆիզիկոս: Աշխ–ները վերաբերում են էլեկտրոն. օպտիկային, ստեղծել է 1–ին էլեկտրոն. մանրադիտակը: Նոբելյան մրց. (1986):

«ՌՈՒՍԿԻ ՅԱԶԻԿ Վ ԱՐՄԵՆԻԻ» («Русский язык в Армении»– «Ռուսաց լեզուն Հայաստանում»), գիտամեթոդ. երկամսյա (միջազգ.) հանդես (1999–ից, Երևան՝ ռուս.): Հիմնադիր՝ ՀՀ ԿԳՆ Կրթության ազգ. ինստ.: Խմբ–ներ՝ Բելա Եսաջանյան, Անահիտ Ամիրխանյան (2017–ից):

«ՌՈՒՍԿԻ ՅԱԶԻԿ Վ ԱՐՄՅԱՆՍԿՈՅ ՇԿՈԼԵ» («Русский язык в армянской школе» – «Ռուսաց լեզուն հայկական դպրոցում»), ուսումնամեթոդ. երկամսյա հանդես [1957–91, Երևան՝ ռուս., մինչև 1978–ը՝ «Խորհրդային մանկավարժ» (1991–ից՝ *«Մանկավարժ»*) հանդեսի հավելված]: ՀԽՍՀ ժողկրթության նախ–յան հրտ–յուն: Խմբ–ներ՝ Պ. Սիմոնյան, Ելենա Ղազարյան:

«ՌՈՒՍԿԻԵ ՎԵԴՈՄՈՍՏԻ» («Русские ведомости» – «Ռուսական տեղեկագրեր»), ռուս. ազդեցիկ պարբ–ներից (1863–1918, Մոսկվա): 1870–ական թթ–ից՝ լիբերալ ուղղվածության: Խմբ–ներ՝ Ն. Ս. Սկվորցով, Վ. Մ. Սորոլևսկի, Ա. Ս. Պոնսիկով, Ա. Ի. Չուպրով: 1905–ից՝ կադետ. հրտ–յուն:

ՌՈՒՍ–ՃԱՊՈՆԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ (գաղտնի, ստորագրվել է 1912–ին Ս. Պետերբուրգում), Հս–արլ. Չինաստանը և Ներքին Մոնղոլիան ազդեցության գոտիների բաժանման վերաբերյալ:

ՌՈՒՍ–ՃԱՊՈՆԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԵՐ, 1. **1907**, կնքվել է Ս. Պետերբուրգում: Ճանաչվել են կողմերի տարածք. ամբողջականությունը, Չինաստանի անկախությունն ու ամբողջականությունը և նրա հետ հավասար իրավունքներով առևտրի իրավունքը: Մանջուրիան բաժանվել է ռուս. (հս.) և ճապոն. (հվ.) ազդեցության գոտիների: Կորեան համարվել է Ճապոնիայի, իսկ Ներքին Մոնղոլիան՝ Ռուսաստանի առանձնահատուկ հետաքրքրությունների գոտի: 2. **1910**, կնքվել է Ս. Պետերբուրգում՝ Չինաստանում ստատուս–քվոյի խաթարման կամ Մանջուրիայում կողմերի առանձնահատուկ հետաքրքրությունների վտանգման դեպքում համաձայնեցված գործողությունների վերաբերյալ: Ռուսաստանը փաստորեն թույլատրել է Ճապոնիային բռնազավթել Կորեան: 3. **1916**, կնքվել է Պետրոգրադում (բանավոր և գաղտնի): Փաստորեն հաստատվել է ռուս–ճապոն. ռազմ. դաշինք՝ պաշտպանելու Չինաստանը 3–րդ տերության քաղ. ազդեցությունից:

ՌՈՒՍ–ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ 1904–05, ծագել է Հս–արլ. Չինաստանում և Կորեայում գերիշխանության հա-

մար: Սկսել է Ճապոնիան: 1904-ի հիմն. ռազմ. գործողություններն են ճապոն. նավատորմի հարձակումը Պորտ-Արտուրի ամրոցի վրա, ամրոցի պաշտպյունը, Յալու, Շախե գետերում և Լյաոյանում տեղի ունեցած՝ Ռուսաստանի համար անհաջող ճակատամարտերը ևն: 1905-ի հիմն. ռազմ. գործողություններն են ռուս. բանակի ջախջախումը Մուկդենում, իսկ նավատորմինը՝ Ցուսիմայի մոտ: Ավարտվել է 1905-ի Պորտսմուտի հաշտությամբ: Նպաստել է 1905–07-ի ռուս. հեղ-յան բռնկմանը:

ՌՈՒՄՆԵՐ, ազգ, ՌԴ հիմն. բնակչությունը (111 մլն, 2010): Ապրում են նաև Ուկրաինայում (8,3 մլն, 2001), Ղազախստանում (3,8 մլն, 2009), ԱՄՆ-ում (1,9 մլն, 2000), Բելառուսում (1,1 մլն, 1999), Լատվիայում (703,2 հզ., 2000), Մոլդովայում (369,9 հզ., 2004) ևն: Ընդհ. թիվը՝ շուրջ 140 մլն (2010): Լեզուն՝ ռուս.: Հավատացյալները հիմնականում ուղղափառ քրիստոնյա են:

ՌՈՒՄՆՅԱԿ (Rusznyák) Իշտվան (1889–1974), հունգար թերապևտ, ախտաբան-ֆիզիոլոգ և կենսաքիմիկոս: Հունգարիայի ԳԱ ակադ. (1946, նախագահ՝ 1949–70-ին), ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1958): Աշխ-ները վերաբերում են ավշագոյացման ախտաբանությանն ու ֆիզիոլոգիային, շոկի կանխարգելմանը, արյան կենսաքիմիային: Հայտնաբերել է (1936, Ա. *Սենտ Դյորդիի* հետ) P վիտամինը:

ԽՍՀՄ ԳԱ Մ. Վ. Լոմոնոսովի անվ. ոսկե մեդալ (1968):

ՌՈՒՍ–ՇՎԵԴԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ, 1. **1656–58**, մղել է Ռուսաստանը՝ դեպի Բալթիկ ծով ելք ունենալու համար: Սկսվել է ռուս. զորքերի խոշոր հաղթանակներով: 1657–58-ի ռազմ. գործողություններն ընթացել են փոփոխակի հաջողություններով: Ավարտվել է 1658-ի Վալիեսարիի զինադադարով և 1661-ի Կարդիսի հաշտությամբ: 2. **1700–21**, տես *Հյուսիսային պատերազմ 1700–21*: 3. **1741–43**, Շվեդիան փորձել է վերադարձնել Հս. պատերազմի ժամանակ կորցրած տարածքները: Ռուս. զորքերը և նավատորմը մի շարք հաղթանակներ են տարել: Ավարտվել է 1743-ի Աբոսի հաշտությամբ: 4. **1788–90**, Շվեդիան փորձել է վերադարձնել իր նախկին տարածքները Մերձբալթիկայում: Ռուս. նավատորմը փաստեղ հաղթանակներ է տարել Գոգլանդի (1788) և Վիբորգի (1790) ծովամարտերում: Շվեդների հարձակման ձախողումը Ֆինլանդիայում ստիպել է վերջիններիս կնքել 1790-ի Վերելի հաշտության պայմանագիրը: 5. **1808–09**, Ռուսաստանը փորձել է լիակատար վերահսկողության տակ առնել Ֆինն. և Բոտնիկի ծոցերը: Ռուս. զորքերը գրավել են Ֆինլանդիան, Ալանդյան կղզիները և դեսանտ իջեցրել շվեդ. ափ: Ավարտվել է Ֆրիդրիխսգամի հաշտությամբ:

ՌՈՒՍՈ (Rousseau) Թեոդոր (1812–1867), ֆրանսիացի գեղանկարիչ: Բարբիզոնի դպրոցի առաջնորդը: Բնանկարները («Ֆոնտենբլոյի անտառում») աչքի են ընկնում երանգների խտությամբ և նյութականությամբ, լուսաղ. միջավայրի վերարտադր-յամբ: Ռ-ի «Բնանկար» գործը ՀԱՊ-ում է:

ՌՈՒՍՈ Ժան-Ժակ (1712–1778), ֆրանսիացի փիլ., գրող: Դեիզմի դիրքերից քննադատել է պաշտոն. եկեղեցին և կրոն. անհանդուրժողականությունը: «Դատողություններ մարդկանց միջև անհավասարության ծագման և հիմքերի մասին» (1755) և «Հասարակական դաշինքի մասին» (1762, հայ., 2016) երկերում հանդես է եկել սոցիալ. անհավասարության դեմ: Ըստ Ռ-ի՝ պետությունը կարող է ստեղծվել միայն ազատ մարդկանց դաշինքի հիման վրա: Ռ-ի գեղ. և մանկավարժ. հայացքներն արտահայտված են «Էմիլ կամ Դաստիարակության մասին» (1762, հայ. մասնակի՝ գիրք 1–2, 1904, ամբողջ.՝ 1960–62) աշխ-յան մեջ: «Յուլիա կամ Նոր Էլոիզ» (1761) և «Խոստովանություն» (հրտ.՝ 1782–89) վեպերը, նպաստել են փսիխոլոգիզմի կայացմանը եվրոպ. գրկ-յան մեջ: «Պիգմալիոնը» (հրտ.՝ 1771) մելոդրամայի վաղ նմուշներից է: Ռ-ի (ռուսոյականության) գաղափարները (բնության պաշտամունքը, «հիանալի հոգու» իդեալականացումը ևն) էապես ազդել են XVIII–XIX դդ-ի հայ հաս. մտքի և գրկ-յան վրա: Ռ-ի «հասարակական դաշինքի» և բնական իրավունքի տեսություններին հետևել են Գ. Փեշտիմալճյանը, Ն. Զորայանը, Ա. Բագրատունին, Մ. Աղաչրաղյանը, Մ. Թաղիադյանը, Ս. Նազարյանը, պետության ստեղծման ժողովրդավար. սկզբունքներով ներշնչվել են Շ. Շահամիրյանը, Մ. Բաղրամյանը, Մ. Նալբանդյանը, մանկավարժ. հայացքները պաշտպանել են Խ. Աբովյանը, Ղ. Ալիշանը և ուր.:

ՌՈՒՍԶՈՒԿԱՅԱՆ Գևորգ վարդապետ (Պողոսյան Թադևոս, 1829–1893), եկեղեց., հաս. գործիչ: Վրդ. (1875), պատրիարք. տեղապահ (1884), Կեսարիայի վիճակի առաջնորդ (1886): Ներսես *Վարժապետյանի* հրահանգով կազմակերպել է Բալկանյան ռազմաճակատի հրամ. մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչի ընդունելությունը Կ. Պոլսի հայկ. եկեղեցում, կազմել և դիվանագետ Ն. Պ. Իգնատևին է ներկայացրել «ազգային ինքնօրինության» ծրագիր, որը *Սան Ստեֆանոյի պայմանագրի*՝ հայերին վերաբերող 16-րդ հոդվածի նախն. տարբերակն էր:

ՌՈՒՍ–ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 1723, կնքվել է Պետերբուրգում Պարսկ. արշավանքից հետո: Ռուսաստանին են անցել Դերբենդը, Բաքուն, Գիլանի, Մազանդարանի և Աստաբադի նհնգ-ները: Նախատեսել է Իրանին ցուցաբերել ռազմ. օգնություն ևն:

ՌՈՒՍ–ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ, 1. **1804–13**, սկսել է Պարսկաստանը՝ ռուս. կառ-յան՝ Այսրկովկասից զորքերի դուրսբերման վերաբերյալ վերջնագիրը չընդունելուց հետո: Ռուս. զորքերը մի շարք հաղթանակներ են տարել: Ավարտվել է 1813-ի *Գյուլիստանի հաշտության պայմանագրով*: 2. **1826–28**, սկսել է Պարսկաստանը՝ Արլ. Այսրկովկասը վերագրավելու նպատակով: Ռուս. զորքերը գրավել են Նախիջևանը, Երևանը, Թավրիզը ևն: Ավարտվել է 1828-ի *Թուրքմենչայի պայմանագրով*:

ՌՈՒՍ–ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ 1914 (ավարտվել է նոտաների փոխանակությամբ), ԱՀՊ-ում Ռուսաստանի կատմամբ Ռումինիայի չեզոքության մասին է:

ՌՈՒՍՍԻ (Roussy) Գյուստավ (1874–1948), ֆրանսիացի նյարդաբան: Աշխ-ները վերաբերում են նյարդաուռուցքաբանությանը և նյարդաներզատաբանությանը: Նկարագրել է նյարդ. համակարգի մի շարք հիվանդություններ: Քաղցկեղ. հիվանդությունների դեմ պայքարի ինստ-ի հիմնադիրը և առաջին տնօրենը (1930-ից):

ՌՈՒՍՏԱՄ, **Ռուստամ Ռազա, Մելիք Ռուստամ** (Խաչատուրյան Ռոստոմ Հովնանի, 1780–1845), ***Նապոլեոն I***-ի թիկնապահը: Կահիրեում ծառայել է շեյխ Ալ-Բաքրի մոտ, որը Ռ-ին նվիրել է Նապոլեոնին: Ռ. Նապոլեոնին ուղեկցել է նրա բոլոր արշավանքների ժամանակ: 1814-ից հետո հեռացել է Ֆրանսիայից: Մասնակցել է 1826–28-ի ռուս-պարսկ. պատերազմին, այնուհետև բնակվել է Շուշիում: 1840-ին վերստին հայտնվել է Ֆրանսիայում՝ Նապոլեոնի աճյունը Սբ Հեղինե կղզուց Փարիզ ուղեկցող սգո թափորի մեջ: Բնակվել է Դուրդանում, որտեղ գրել է «Նապոլեոն I-ի մամլուք Ռուստամի հուշերը» (ֆրանս. հրտ.՝ 1866):

ՌՈՒՍՏԵՄ Յան, **Ռաստեմաս Յոնաս, Ռուստեմ Հովհաննես Ֆրանցիսկի** (1762–1835), գեղանկարիչ: Լիտվ. ազգ. նկարչ. դպրոցի հիմնադիրներից: Հեղինակ է հիմնականում վաղ ռոմանտիզմի ոգով դիմանկարների («Ինքնանկար», «Տատը թոռան հետ» ևն), գծանկարների՝ գյուղ. և քաղաք. կյանքից:

ՌՈՒՍ–ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, ռազմաքաղ. միություն Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև 1891–1917-ին՝ ընդդեմ Եռյակ միության: Սահմանվել է 1891-ի հաշտությամբ և 1892-ի ռազմ. գաղտնի համաձայնագրով: Կողմերը պարտավորվել են փոխադարձ օգնություն ցուցաբերել Ռուսաստանի կամ Իտալիայի վրա Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի, և Ֆրանսիայի վրա՝ Գերմանիայի հարձակումների դեպքում: Ամրապնդվել է 1912-ի ռուս-ֆրանս. ռազմածով. համաձայնագրով:

ՌՈՒՍ–ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ, 1. **1798–1800**, մղել է Ռուսաստանը՝ 2-րդ հականապոլեոնյան դաշինքի կազմում: Ա. Վ. Սուվորովի 1799-ի Իտալ. և Ֆ. Ֆ. Ուշակովի 1798–1800-ի Միջերկրածով. արշավանքների ժամանակ Ֆրանս. զորքերը պարտություն են կրել Հս. Իտալիայում. ռուս. զորքերն ազատագրել են Հոնիական կղզիները և Հվ. Իտալիան: Սուվորովի 1799-ի Շվեյցար. արշավանքից հետո տարաձայնություններ են ծագել Ավստրիայի ու Անգլիայի հետ, որից հետո Ռուսաստանը դուրս է եկել պատերազմից՝ կնքելով 1801-ի *Փարիզի հաշտության պայմանագիրը*: 2. **1805**, մղել է Ռուսաստանը՝ 3-րդ հականապոլեոնյան կոալիցիայի կազմում, Ավստրիայի տարածքում: 1805-ի *Աուստերլիցի ճակատամարտում* պարտությունից հետո Ավստրիան դուրս է եկել պատերազմից, իսկ ռուս. զորքերը Մ. Ի. Կուտուզովի գլխավորությամբ հետ են քաշվել դեպի Ռուսաստան: 1806-ին Փարիզում կնքվել է հաշտության պայմանագիր: 3. **1806–07**, մղել է Ռուսաստանը՝ 4-րդ հականապոլեոնյան դաշինքի կազմում, Պրուսիայի տարածքում: Պրուս. բանակը ջախջախվել է Ենայի և Աուերշտեդի, իսկ ռուսականը՝ Ֆրիդլանդի մոտ: Ավարտվել է 1807-ի *Տիլզիտի հաշտությամբ*: Տես նաև *Հայրենական պատերազմ 1812*:

ՌՈՒՍ–ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՌԱԶՄԱԾՈՎԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ 1912, նոտաներ են փոխանակել ռուս-ֆրանս. միության շրջանակներում նավատորմերի համա-

տեղ ռազմ. գործողությունների իրականացման և կողմերի ծով. ԳԾ-ների ռազմավար. պլանների համապատասխանեցման վերաբերյալ:

ՌՈՒՎԵՆԶՈՐԻ (Ruwenzori), լ–զանգված Արլ. Աֆրիկայում՝ Կոնգոյի ԺՀ–ի և Ուգանդայի սահմանին: Բարձր.՝ 5109 *մ* (Մարգերիտա):

ՌՈՒՎՈՒՄԱ, Ռովումա (Ruvuma, Rovuma), գետ Արլ. Աֆրիկայում՝ Մոզամբիկի և Տանզանիայի սահմանին: Երկ.՝ շուրջ 800 *կմ*, ավազանը՝ 150 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 700 *մ*^{3}/*վ*: Թափվում է Հնդ. օվկ–ը:

ՌՈՒՏԲԵՐԳ Ֆիլիպ Գրիգորևիչ (1931–2015), ռուս. էլեկտրատեխնիկ: ՌԳԱ ակադ. (2000): Աշխ–ները վերաբերում են գազ. պարպումներին, էլեկտրամեք. ագրեգատներով էներգաանուցման իմպուլս. համակարգերի ստեղծմանը: ԽՍՀՄ Պետ. (1982), ՌԴ (2003) մրց–ներ:

ՌՈՒՏԻԼ (լատ.՝ rutilus – դեղնակարմիր, վառ կարմիր), միներալ, TiO_2: Խառնուրդների ձևով պարունակում է Fe, Cr, երբեմն՝ V, Nb, Ta: Տարատեսակները՝ նիգրին (մինչև 11 % Fe_2O_3), լեյկօքսեն, լեռնակն: Կարծր.՝ 6,5–7,5, խտ.՝ 4,2–4,4 *գ/սմ*^{3}: Անգույն է, սակայն խառնուրդների առկայությամբ ունենում է տարբեր երանգներ: Արհեստ. Ռ. օգտագործվում է ոսկերչության մեջ: Կիրառվում է նաև տիտանային պողպատների և կարբիդների արտադր–յան մեջ, ռադիոտեխնիկայում ևն:

ՌՈՒՏԻՆ, ֆլավոնոիդների խմբի օրգ. միացություն, օժտված է վիտամին. ակտիվությամբ: Ամրացնում է մազանոթների պատերը՝ կարգավորելով նրանց թափանցելիությունը: Պարունակվում է հնդկացորենի, թեյի թփի տերևներում, ցիտրուսներում, սև հաղարջում ևն:

ՌՈՒՏԿԱՅ (Ruttkai) Եվա (1927–1986), հունգար դերասանուհի: ՀԺՀ ժող. արտիստ (1971): 1945–ից խաղացել է «Վիգսինհազ» ազգ. թատրոնում, ճանաչվել կատակերգ. և բնութագր. դերերով: Նկարահանվել է կինոյում («Մի բաժակ գարեջուր», «Կեսգիշերին», «Էտյուդ կանանց մասին», «Լաբիրինթոս» ևն): Լ. Կոշուտի անվ. Ազգ. մրց. (1960):

ՌՈՒՏՈՒԼԵՐԵՆ, Դաղստանի պետ. լեզուներից: Պատկանում է իբերա–կովկաս. լեզուների նախյան–դաղստանյան ճյուղի լեզգ. խմբին: Գրի հիմքում մինչև 1928–ը՝ արաբ., 1928–38–ին՝ լատ., ապա ռուս. այբուբենն է:

ՌՈՒՏՈՒԼՅԻՆԵՐ (ինքնանվանումը՝ արդիր), ժողդ ՌԴ–ում՝ Դաղստանում (24,3 հզ., 2002): Ընդհ. թիվը՝ 29,9 հզ.: Ապրում են նաև Հս. Ադրբեջանում: Լեզուն՝ *ռուտուլերեն*: Հավատացյալները սուննի մահմեդական են:

ՌՈՒՀ (Ruhr), գետ Գերմանիայում, Հռենոսի աջ վտակը: Երկ.՝ 235 *կմ*, ավազանը՝ 4,5 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 70 *մ*^{3}/*վ*: Ձրանցքով միացված է Էմս գետին: Ռ–ի երկ–յամբ տարածվում է Ռուրի ածխային ավազանը: Ափին է Էսսենն, գետաբերան. հատվածում՝ Դույսբուրգ–Ռուրորտ նվինգատ–ը:

ՌՈՒՀՓԻ (սանսկրիտ՝ ռուփյա – հատած արծաթ), Բութանի, Հնդկաստանի (XVI դ–ի վերջից) և մի շարք այլ երկրների դրամ. միավորը:

ՌՈՒՖԻՋԻ (Rufiji), գետ Տանզանիայում: Երկ. Լուվեգու վտակի ակունքից՝ 1400 *կմ*, ավազանը՝ 178 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1100 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է Շուգուրի ջրվեժից ներքև:

ՌՈՒՖՖԻՆԻ (Ruffini) Պաոլո (1765–1822), իտալացի մաթեմատիկոս: 1799–ին առաջինն է ապացուցել 5–րդ կարգի հանրահաշվ. հավասարումների արմատներով անլուծելիությունը:

ՌՈՒՖՖԻՆԻ Ջովաննի (1807–1881), իտալացի գրող: 1836–49–ին՝ տարագիր: Հեղինակ է «Լորենցո Բենոնիի գրառումները» (1853, կարբոնարների մասին), «Բժիշկ Անտոնիոն» (1855), «Լավինիա» (1860) վեպերի:

Ս

Ս, հայ. այբուբենի 29-րդ տառը, անվանումը՝ սե: Ունի ***գրչագիր***, ***երկաթագիր***, ***բոլորգիր***, ***շղագիր***, ***նուրբգիր*** տառատեսակները: Հայ-ի առաջնալեզվ. միջատամնային շփական խուլ սուլական բաղաձայն հնչյուն (հնչույթ) է: Թվային արժեքը՝ 2000:

ՍԱԱԴԻ (Մսլեհեդդին Աբու Մուհամմադ Աբդոլլահ իբն Մշրեֆեդդին, 1203–1210-ի միջև–1292), պարսիկ գրող և մտածող: Որպես դերվիշ՝ շուրջ 20 տարի շրջագայել է Արևելքի երկրներում, Աֆրիկայի հս-ում, այցելել Մեքքա: Եղել է նաև Հայաստանում: Հեղինակ է քասիդների, գազելների (այդ թվում՝ սիրային «Թարջինաբանդ» շարքի), ռուբայիների և կիթաների (պարսկ. ու արաբ.), «Բուսթան» բարոյախրատ. երկի. նվիրել է Աբու Բեքր իբն Սաադիին (1226–1260)՝ Շիրազի կառավարչին ու իր հովանավորին, որի պատվին հետագայում ընտրել է Ս. գր. կեղծանունը: Նրան է նվիրել նաև «Գոլեստան» (1258, հայ.՝ 1920) բարոյախրատ. ժող-ը: XIX դ-ում Ս-ի գործերից թարգմանել են Գեորգ Դպիր Պալատեցին, Հ. Մասեհյանը, Մ. Մաքսուդյանը, Հ. Միրզայանը, Հ. Աճառյանը և ուր.:

ՍԱԱԿԱՉԵ Գեորգի, **Մեծ Մոուրավի** (մոտ 1580–1629), վրացի քաղ. գործիչ և զորավար: 1625-ին գլխավորել է Իրանի շահի դեմ ապստամբությունը: Պարտվելով Վրաց թագավոր ***Թեյմուրազ I***-ի դեմ պայքարում՝ փախել է Թուրքիա, որտեղ և սպանվել է:

ՍԱԱՄԻՆԵՐ (ինքնանվանումը՝ սաամի), ժողդ Նորվեգիայի հս-ում և արլ-ում (37,8 հզ., 2007), Շվեդիայի հս-ում (մոտ 20 հզ.), Ֆինլանդիայում (5,8 հզ.) և ՌԴ-ում (մոտ 2 հզ.): Պատկանում են լապոնոիդ ռասային: Լեզուն՝ սաամերեն: Հավատացյալները Սկանդ. երկրներում լութերական են, Ռուսաստանում՝ ուղղափառ:

ՍԱԱՐ, **Սաարի մարզ** (Saarland), պատմ. մարզ և երկիր Արմ. Գերմանիայում: Վարչ. կենտրոնը՝ ***Սաարբրյուքեն***: 1919-ից կառավարել է Ազգերի լիգայի հանձնաժողովը (ածխահորերը Ֆրանսիայի սեփականությունն էին), 1935-ին հանրաքվեով անցել է Գերմանիային: ԵՀՊ-ից հետո եղել է ֆրանս. օկուպացիոն գոտում: 1957-ից, Ֆրանսիայի և Գերմանիայի միջև կնքված պայմանագրով (1956), վերջնականապես անցել է Գերմանիային:

ՍԱԱՐԲՐՅՈՒՔԵՆ (Saarbrücken), ք. Գերմանիայում՝ Սաար գետի ափին: ***Սաար*** երկրի վարչ. կենտրոնը: Բն.՝177 հզ. (2010): Ածխային ավազանի կենտրոն է:

ՍԱԱՐԻՆԵՆ (Saarinen) Էլիել (1873–1950), ֆիննո ճարտ., դիզայներ, արվ-ի տեսաբան: Է. ***Սաարինենի*** հայրը: Համադրել է ժող. ճարտ-յան ավանդույթները և նախագծման նպատակահարմար լուծումները (կայարան՝ Հելսինկիում, 1910–14): Քաղաքաշին. աշխ-ները (Մեծ Հելսինգֆորսի հատակագիծը, 1915–18) հիմնված են ճարտ-յան և լանդշաֆտի միասնականության վրա: 1923-ից՝ ԱՄՆ-ում:

ՍԱԱՐԻՆԵՆ Էրո (1910–1961), ֆիննո ճարտ.: Է. ***Սաարինենի*** որդին: 1923-ից՝ ԱՄՆ-ում: Հոր մահից հետո ավարտել է «Ձևներալ Մոթորս» տեխ. կենտրոնի համալիրը (ք. Ուորեն, Միչիգանի նահ, 1949–56): Ազատ պլաստիկ ձևերով երկաթբետոնե շենքերում [Ջ. Քենեդիի անվ. (Նյու Յորք, 1956–62), Ջ. Ֆ. Դալլասի անվ. (Վաշինգտոնին մերձ, 1958–62) օդանավակայանների կայարանները] ձգտել է խորհրդանշ. կերպարայնության, ռոմանտիկ. տպավորության (Մասաչուսեթսի տեխնոլոգ. ինստ-ի կապելլան, 1950–55):

ՍԱԲԱԴԵԼ (Sabadel), ք. Իսպանիայի Կատալոնիա ԻՄ-ում: Բն.՝ 212,3 հզ. (2010): Բարսելոնի արդ. ք-արբանյակը:

ՍԱԲԱԹԻԵ (Sabatier) Պոլ (1854–1941), ֆրանսիացի քիմիկոս-օրգանիկ, օրգ. կատալիզի հիմնադիրներից: Փարիզի ԳՄ (1913), Լոնդոնի թագավոր., Ամերիկ. քիմ. ընկ-ների անդամ: Առաջարկել է որպես կատալիզորդներ օգտագործել նիկել, պղինձ, կոբալտ, երկաթ մետաղները: Նրանցով իրականացրել է տարբեր ռեակցիաներ, այդ թվում՝ հիդրում:

Նոբելյան մրց. (1912, Վ. ***Գրինյարի*** հետ):

ՍԱԲԱՀ ԱԼ-ԱՀՄԵԴ ԱԼ-ՋԱԲԱՐ ԱՄ-ՍԱԲԱՀ (ծ. 1929), Քուվեյթի պետության ղեկ. (էմիր)՝ 2006-ից: Վարչապետ՝ 2003–06-ին:

ՍԱԲԱՀԱԹԹԻՆ ԱԼԻ (Sabahattin Ali, 1907–1948), թուրք գրող: Հեղինակ է «Ալբաղաց» (1935), «Ձայն» (1936) պատմվածքների ժող-ների, «Քույուջակցի Յուսուֆը» (1937) վեպի: Հայ. հրատարակվել են «Մուշտակով տիրամայրը» (1973) վիպակը, «Մեր միջի սատանան» (1959) վեպը, «Փոքրիկ Հասանը: Պատմվածքներ» (1954), «Պատմվածքներ» (2013) ժող-ները:

ՍԱԲԱՆԵԵՎ Լեոնիդ Պավլովիչ (1844–1898), ռուս. կենդանաբան և բնախույզ: Աշխ-ները վերաբերում են հիմնականում արդյունագործ. կենդանիներին: Դաս. աշխ-ը՝ «Ռուսաստանի ձկները և մեր քաղցրահամ ջրերի ձկների որսը» (հ. 1–3, 1874–75), բազմիցս վերահրատարակվել է: Հրատարակել և խմբագրել է «Բնություն» (ռուս., 1873-ից), «Բնություն և որս» (ռուս., 1878-ից) ամսագրերը:

ՍԱԲԱՄԻՈՍ, **Սաբաձիոս**, ***Զևսի*** և ***Պերսեփոնեի*** (որի հետ Զևսն ամուսնացել է օձի կերպարանք ընդունելով) որդին հուն. դից-յան մեջ: Ս. փոյուգիական աստվածություն է, որը Հունաստանում համապատասխանում է Դիոնիսոսին, Հռոմում՝ Յուպիտերին:

ՍԱԲԱՏԻՆԻ (Sabatini) Ռաֆայել (1875–1950), իտալացի անգլիագիր գրող: Հեղինակ է «Սկարամուշ հեղափոխականը» (1921, հայ.՝ 1937), «Բելարիոն» (1926) պատմավեպերի, «Ծովային ճուռակ» (1915), «Նավապետ Բլադի ոդիսականը» (1922, հայ.՝ 1964) արկածային վեպերի:

ՍԱԲԱՏՈ (Sábato) Էռնեստո (1911–2011), արգենտինացի գրող, նկարիչ: Հեղինակ է էկզիստենցիալիստ. թեմաներով «Թունելը» (1948, հայ.՝ 2014), «Հերոսների և գերեզմանների մասին» (1961) վեպերի, «Աբադոննա-կործանիչ» (1974) քննադատ. վեպ-տարեգրության, «Մարդիկ և պտուտակներ» (1951), «Մարդու ոդրոտացումը» (1981) էսսեների ժող-ների, նաև հուշագրության (1998):

ՍԱԲԻՆԻՆ Դմիտրի Անատոլևիչ (1889–1951), ռուս. բուսաբան, բույսերի ֆիզիոլոգների գիտ. դպրոցի հիմնադիրներից Ռուսաստանում: Հետազոտել է արմատ. համակարգի դերը ջր. և հանքանյութ. սնուցման մեջ: Հաստատել է ջրի և հանքանյութ. սնուցման տարրերի ազդեցությունը բույսերի աճի և ձևագոյացման վրա:

ՍԱԲՐԱԹԱ [լատ.՝ Sabrat(h)a], հին ք. Լիբիայում՝ Աֆրիկայի հս. ափին (ժամանակակից Տրիպոլի ք-ից 3 *կմ* հեռու): Հիմնադրել են փյունիկեցիները մ. թ. ա. VII–VI դդ-ում: Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՍԱԲՈՒՐՈՎ, Ալեքսանդր Նիկոլաևիչ (1908–1974), ՀՄՊ-ի ժամանակ պարտիզան. շարժման ղեկ-ներից, գեն-մայոր (1943): ԽՄ հերոս (1942): Պարտիզան. միավորման հրամ.՝ Օրյոլի (ՌԽՖՍՀ), Սումիի (Ուկր. ԽՍՀ) մարզերում:

ՍԱԳԱ, ք. Ճապոնիայում, համանուն պրեֆեկտուրայի վարչ. կենտրոնը Կյուսյու կղզում: Բն.՝ 237,3 հզ. (2010):

ՍԱԳԱՄԻՀԱՐԱ, ք. Ճապոնիայում՝ Տոկիոյի ագլոմերացիայում: Բն.՝ 712,6 հզ. (2010): Զարգացած է էլեկտրոն. և ավտոմոբիլ. արդ-յունը: Միջուկ. հետազոտությունների կենտրոն է:

ՍԱԳԱՆ (Sagan) Ֆրանսուազ (1935–2004), ֆրանսիացի գրող: Հեղինակ է «Բարև, թախիծ» (1954, հայ.՝ 1980), «Սիրո՞ւմ եք Բրամս» (1959, հայ.՝ 1978), «Մի քիչ արև պաղ ջրի մեջ» (1969, հայ.՝ 1978), «Կորուսյալ կիսադեմ» (1974), «Դիմահարդարված կինը» (1981), «Եվ գավաթը լցվել է» (1985) և հոգեբ. այլ վիպակների: Հայ. հրատա-

րակվել է նաև «Բաց անկողին» (2002) վիպակը:

ՍԱԳԱՄՈՒԽԿԱ (Gagea), շուշանազգիների ընտանիքի բազմամյա սոխուկավոր խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 100 (այլ տվյալներով՝ 130) տեսակ, ՀՀ-ում՝ 26 (դեղին, ցանցավոր, կոճղակիր, թավոտ փոքր ևն): Ամբողջ բույսը պարունակում է սխտորի եթերայուղ: Ժող. բժշկության մեջ սոխուկների եփուկն օգտագործում են այտուցների, դեղնախտի, բրոնխ. հեղձուկի ժամանակ: Սոխուկներն ու տերևներն ուտելի են: Մեղրատու է:

ՍԱԳԴԵԵՎ, Ռենադ Զինուրովիչ (ծ. 1941), թաթար ֆիզքիմիկոս: ՌԳԱ ակադ. (1997, թղթ. անդամ՝ 1987-ից): Ռ. Զ. *Սագդեևի* եղբայրը: Աշխ-ները վերաբերում են քիմ. փոխարկումների տարր. ակտերին, ճառագայթասպեկտրազննությանը և միջուկների քիմ. բևեռայնությանը:

Լենինյան (1986), ՌԴ Պետ. (1994) և Կառ-յան (2015) մրց-ներ:

ՍԱԳԴԵԵՎ, Ռոալդ Զինուրովիչ (ծ. 1932), թաթար ֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (1968): Սոց. աշխ. հերոս (1986): Ռ. Զ. *Սագդեևի* եղբայրը:1990-ից՝ ԱՄՆ-ում: Աշխ-ները վերաբերում են պլազմայի ֆիզիկայի (հարված. ալիքներ, տեղափոխության շարժընթացներ, անկայունություն), ԿՋՄՄ խնդիրներին: Լենինյան մրց. (1984):

ՍԱԳԵՐ (Anser), սագանմանների կարգի բադերի ընտանիքի ջրլող թռչունների մի քանի սեռերի ընդհ. անվանումը: Երկ.՝ 60–100 *սմ*, կ. զ.՝ մինչև 6 *կգ*: ՀՀ-ում հանդիպում է 4 տեսակ՝ մոխրագույն, սպիտակաճակատ, ծվվան, կարմրախածի Ս.: Որսարդյունագործ. թռչուն է: Մոխրագույն Ս. (ընտանի Ս-ի նախահայրը) ծագել են բարակակտուց Ս-ից: Ընտանի Ս. (արզամասյան, գորշ խոշոր, ուրալյան, խոլմոգորյան, շադրինյան, թուլուզյան, պոմերանյան ևն) բազմացնում են միս ստանալու համար:

Հայաստանում Ս. հնագույն ժամանակներից տարածված են եղել Սևանա, Վանա, Արփի լճերում, նաև Էրզրումի, Մուշի շամբերում:

ՍԱԳԸՋԱՆ Արմենակ Հովհաննեսի (1872–1944), արվեստաբան, արևելագետ: Կ. Պոլսի *Հայ գեղարվեստական միության* հիմնադիրներից (1919) և նախագահը: Հեղինակ է «XVII–XVIII դդ. պարսկական մանրանկարչությունը» (ֆրանս., 1929), «Հայ արվեստի էջեր» (ֆրանս., ժող., 1940) և այլ աշխ-ների:

«ՍԱԳԻ ՄԱՇԿ», մարդու մաշկի փոփոխություն. առաջանում է ցրտի և հոգեբ. հուզումների (հատկապես՝ վախի) հետևանքով: Մաշկի մազերը բարձրացնող մանր մկանների կծկման հետևանքով մազարմատի շրջանում առաջանում են փոքր հանգուցիկներ, և մաշկը նմանվում է փետրահան արած սագի մաշկի: «Ս. մ.» նաև մաշկի եղջերաթաղանթի գերաճի (կերատոզ) ախտանշան է:

ՍԱԳՈՅԱՆ Արտավազդ Արամի (1904–1971), փոխծովակալ (1951): Ռազմածով. գիտ. թեկնածու (1951), դոցենտ (1956): ՀՄՊ-ի ժամանակ ղեկավարել է Լենինգրադը պաշտպանող նավախմբերից մեկի հրետանին: Այնուհետև ծառայել է ՌԾՈՒՒ ԳԾ-ում: Զորացրվել է 1961-ին:

ՍԱԳՈՅԱՆ ԱՐՄԱՎԵՆԻՆԵՐ, արմավենիների տեսակ, որոնց բնի միջուկից ստանում են օսլա՝ սագո (ձավար) արտադրելու համար: Հայտնի է 15 տեսակ՝ Թաիլանդից և Մալայան կղզեխմբից մինչև Նոր Գվինեա:

ՍԱԳՈՎՆԻԿՆԵՐ, **ցիկադայիններ**, մերկասերմ ծառանման բույսերի դաս: Բունը պալարանման կամ բողկանման է: Բարձր.՝ մինչև 20 *մ*, տերևափնջից կազմված սաղարթը՝ մինչև 3 *մ*: Հայտնի է 130 տեսակ՝ արևադարձներում և մերձարևադարձներում: Շատ տեսակներ աճեցնում են որպես զեղազարդիչ:

ՍԱԴ (Sade) Դոնասիեն Ալֆոնս Ֆրանսուա դը (1740–1814), մարքիզ, ֆրանսիացի գրող: Հեղինակ է «Ժյուսթինը կամ Բարերարի անհաջողությունները» (հ. 1–2, 1791), «Ալինան և Վալկուրը» (1793), «Նոր Ժյուսթինը…» (1797), «Փիլիսոփայությունը զարդասենյակում» (1795) վեպերի, «Սոդոմի հարյուր քսան օրը» (հրտ.՝ 1931–35) գրքերի, որտեղ էրոտիկան, ինցեստը ուղեկցվում են բռնությամբ և դաժանությամբ (այստեղից էլ՝ «սադիզմ»):

ՍԱԴԱԹ, **աս-Սադաթ**, Մուհամմադ Անվար (1918–1981), Եգիպտոսի նախագահ՝ 1970-ից: 1978-ից՝ Ազգ-դեմոկրատ. կուսյան նախագահ: Ստորագրել է *Քեմփ Դևիդի համաձայնագիրը*, հաշտության պայմանագիր կնքել Իսրայելի հետ (1979): Խաղաղության Նոբելյան մրց. (1978): Ահաբեկչության զոհ:

ՍԱԴԱԹՅԱՆ Մանուկ (1840–1866), բանաստեղծ, թարգմանիչ: Ս-ի բանաստեղծությունները լույս են տեսել 1858–59-ին «Ճոռաքաղ», «Մեղու Հայաստանի» պարբերներում: Հայ թարգմ. արվ-ի ուշագրավ նմուշներից է Մ. Յ. Լերմոնտովի «Դև» պոեմի Ս-ի թարգմ-յունը («Հյուսիսափայլ», 1863–64, № 1–3, տետրակներ):

ՍԱԴԱԼԱ ՊՈՈՆԵՅԻ, **Ոստանցի**, XVII դ-ի տաղերգու: Պահպանվել են «Սիրով սիրելի Որդին», «Հրաշալի խորհուրդ այսօր մեզ երևի» (անտիպ, Վնտ. մտնդ., ձեռ. № 304) սկզբնատողերով տաղերը, նաև արլ. մի հին զրույցի մշակում:

«ՍԱԳԱՅԷԼ», երգիծ. պարբերաթերթ (1923–24, Նյու Յորք, 1926–29, Յունիոն Սիթի): Ամերիկահայ երգիծասեր երիտասարդության հրտ-յուն: Խմբ-հրտ.՝ Տիրան Վարժապետյան:

ՍԱԴԱՓ, **պեռլամուտր** (գերմ.՝ Perlmutter, < Perle – մարգարիտ և Mutter – մայր), երկփեղկանի և փորոտանի փափկամարմինների խեցու ներսային շերտը, որը կազմված է գլխավորապես արագոնիտի բյուրեղներից: Ունի ծիածանագույն փայլ: Օգտագործվում է կոճակների, զարդերի պատրաստման համար: Խեցու մեջ ընկած օտար մարմինների վրա սաղափը կուտակվելիս առաջանում է մարգարիտ:

ՍԱԴԲԵՐԻ (Sudbury), ք. Կանադայի Օնտարիո պրովինցիայում: Բն.՝ 108 հզ. (2010): Պղնձանիկել. հանքավայրերի շրջանի կենտրոն է:

ՍԱԴԸՂԻ-ԲԵԿ ԱՖՇԱՐ, **Սադրղի Սադրղբեկ-Աֆշար** (1533–1610-ական թթ.), մանրանկարիչ, բանաստեղծ, գրկ-յան պատմաբան: Թավրիզի մանրանկարչության դպրոցի ներկայացուցիչ: Հեղինակ է «Կանուն օսսուվար» («Պատկերման կանոն»), «Մեջմև ուլ-հավաս» (1599) աշխ-ների: Հայտնի են մի քանի մանրանկարներ (հիմնականում՝ դիմանկարներ):

ՍԱԴԻԿՈՎ, Աբիդ Սադիկովիչ (1913–1987), ուզբեկ քիմիկոս-օրգանիկ: Ուզբ. ԽՍՀ ԳԱ ակադ. (1947, նախագահ՝ 1966–87-ին), ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1972): Սոց. աշխ. հերոս (1973): Աշխ-ները վերաբերում են բնական միացությունների, հիմնականում՝ ալկալոիդների քիմիային:

ՍԱԴԻԿՈՎ, Տուրգունբայ (ծ. 1935), ղրղըզ քանդ.: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1986): ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի անդամ (1988): Սոց. աշխ. հերոս (1991): Հեղինակ է «Բարեկամություն» (համահեղ., 1974), «Հեղափոխության մարտիկներին» (1978), «Մանաս» (1981, բոլորը՝ Բիշքեկում) քանդակների: Լենինյան մրց. (1980):

ՍԱԴԿՈ, տավղահար, երգիչ, համանուն ասքի հերոսը, որի սյուժեն մշակվել է XIX դ-ի ռուս. արվ-ում (Ա. Կ. Տոլստոյի «Սադկո», պոեմ, Ն. Ի. Ռիմսկի-Կորսակովի «Սադկո», օպերա):

ՍԱԴՈՅԱՆ Էդուարդ Դրաստամատի (ծ. 1938), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2013): Հեղինակ է «Մ. Վոլկոնսկայայի հուշագրերը» (1981), «Գրիգոր Լուսավորիչ» (2003), «Մաշտոց» (2014) և այլ օպերաների, «Արտակի երազը» (1977), «Նարեկացի՝ ձայն առ Աստված» (2008), մանկ. «Հրաշքների երազ» (2012) բալետների, սիմֆոնիաների (1976, 1982), ֆլեյտայի և կամեր. նվագախմբի կոնցերտի (1983), լար. կվարտետների, «Մանկական ալբոմ» դաշնամուր. շարքի (1967), «Անդաստան» (խոսք՝ Դ. Վարուժանի), «Սիրո հայրենիներ» (խոսք՝ Նահապետ Քուչակի, հրտ.՝ 1982)՝ ձայնի և դաշնամուրի, «Օրհնյալ»՝ ձայնի և լարային գործիքների համար (1983, խոսք՝ Գրիգոր Նարեկացու), և այլ գործերի:

ՍԱԴՈՅԱՆ Իզաբել (1928–2017), կինոդերասանուհի: 1975-ից հանդես է եկել թատրոնում: Նկարահանվել է «Կյանքի մանրուքները», «Ամուսնական մատանի», «Լույս», «Սև գազան», «Ժոզեֆի թաշկինակը», «Սիրու համը», «Մայրիկ» (1991, ռեժ.՝ Ա. Վեռնոյ, Աննա), «Արամ» (2002, ռեժ.՝ Ռ. Քեշիշյան) և այլ ֆիլմերում:

Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» շքանշան (2012):

ՍԱԴՈՅԱՆ Լիպարիտ Արտեմի (1917–1992), ճարտ., ճարտարագետ-շինարար: Նրա նախագծերով և համահեղինակությամբ Երևանում կառուցվել են Հայֆիլմ կինոստուդիայի, բնակելի տներ (1950-ական թթ.), ՀԽՍՀ ԳԱ մանրէաբանության ինստ-ը (1961), Խ. Աբովյանի տուն-թանգարանը՝ Քանաքեռում (1978), Ա. Իսահակյանի հուշարձանը (1965), Դսեղ գ-ում՝ Հ. Թումանյանի, Վահագնի գ-ում՝ ՀՄՊ-ում զոհվածների հիշատակին ավիրված (1973) հուշարձանները ևն: Կազմել է Զվարթնոց տաճարի կոնսերվացման և բարեկարգման նախագծերը (1986–92):

ՍԱԴՈՅԱՆ Վահան Սամսոնի (1901–1990), սրտաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1956), պրոֆ. (1970): ՀԽՍՀ վաստ. բժիշկ (1957): Բժշկ. ծառայության փոխգնդ.: Աշխ-ները վերաբերում են մալարիայի, ամեոբիազի, բրուցելոզի կլինիկային և բուժմանը, մալարիայի բարդացած ձևերի ժամանակ արյան փոխներարկմանը, պսակային անբավարարության, աթերոսկլերոզի ժամանակ և սրտամկանի ինֆարկտից հետո ֆիզ. գործոնների ազդեցությանը:

ՍԱԴՈՎԻ Եվգենի Վիկտորովիչ (ծ. 1973), ռուս մարզիկ (ազատ ոճի լողորդ): ՌԴ ս. վ. վ. (1992): Օլիմպ. խաղերի եռակի (1992), Եվրոպայի քառակի (1991, 1993) չեմպիոն:

ՍԱԴՈՎՅԱՆՈՒ (Sadoveanu) Միհայիլ Ալեքսանդրու (1880–1961), ռումին գրող և հաս. գործիչ: Ռումինիայի Սոց. աշխ. հե-

րոս (1955): Հեղինակ է «Անկուցայի իջևանատունը» (1928), «Միտրյա Կոկոր» (1949, հայ.՝ 1954) և այլ վիպակների, «Լեպուշնյանու փողոցը» (1921), «Տապար» (1930) վեպերի, «Ժղեր եղբայրներ» (1935–42) եռերգության և այլ գործերի, «Պրեկու պապի պանդոկը» (1904), «Գետնահյուղերի բնակիչները» (1912) և պատմվածքների այլ ժող–ների: Ստեղծագործություններում անդրադարձել է հայերի կյանքին: «Նիկոարը Պոդկոավը» (1952) պատմավեպի գլխ. հերոսը հայ *Յոն Պոդկոավըն* է: «Պոդկոավը եղբայրներ» (1902, 1904՝ «Բազեներ» խորագրով) պատմավեպում նկարագրել է *Յոն Քաջի* կամ Հայի և նրա եղբայր Յոն Կարապետ Պոդկոավըի կյանքը: Հայ. հրատարավել է նաև «Ծաղիկների կղզին» (1956) վիպակը:

ՍԱԴՈՎՆԻՉԻ Վիկտոր Անտոնովիչ (ծ. 1939), տեղեկագիտ–յան բնագավառի ռուս գիտնական: ՌԳԱ ակադ. (1997): ՄՊՀ ռեկտոր (1992–ից): Աշխ–ները վերաբերում են մաթ. մոդելավորման, տեղեկույթի մաթ. մշակման հարցերին:

ԽՍՀՄ (1989), ՌԴ Պետ. (2001) մրց–ներ:

ՍԱԴՈՎՍԿԻ Ալեքսանդր Իվանովիչ (1859–1923), ռուս. ֆիզիկոս, պրոֆ.: Տեսականորեն ապացուցել է (1898), որ էլեկտրամագնիս. դաշտն ունի շարժման քանակի մոմենտ (*Սադովսկու էֆեկտ*):

ՍԱԴՈՎՍԿԻ Միխայիլ Ալեքսանդրովիչ (1904–1994), ռուս. ֆիզիկոս: Պայթյունի ֆիզիկայի հիմնադիրներից: ՌԳԱ ակադ. (1966): Սոց. աշխ. հերոս (1949): Աշխ–ները վերաբերում են պայթյունի ավերիչ ազդեցությանը, ուղղորդված պայթյունին և պայթյունների սեյսմիկ էֆեկտներին: Առաջարկել է երկրաֆիզ. միջավայրի մոդել՝ լեռն. զանգվածներում կառուցվածքի բլոկ. աստիճանակարգման հիմքի վրա:

ԽՍՀՄ Պետ. (1948, 1949, 1951, 1953), Լենինյան (1962) մրց–ներ:

ՍԱԴՈՎՍԿԻ (Տորիլևիչ) Նիկոլայ Կարպովիչ (1856–1933), ուկրաինացի դերասան, ռեժ.: Ի. Կ. *Կարպենկո–Կարիի* և Պ. Կ. *Սակսագանսկու* եղբայրը: Թատրոնում հանդես է եկել 1881–ից: 1906–ին հիմնադրել է ուկր. առաջին մշտ. թատրոնը Պոլտավայում, ապա՝ Կիևում, առաջին անգամ ուկր. բեմադրել Ն. Վ. Գոգոլի և Ա. Ն. Օստրովսկու ստեղծագործություններից:

ՍԱԴՈՎՍԿԻ Վիսարիոն Դմիտրևիչ (1908–1991), ռուս. մետաղագետ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1970): Սոց. աշխ. հերոս (1978): Աշխ–ները վերաբերում են պողպատի և համաձուլվածքների ամրացման, լեգիրման հարցերին, տաքացմամբ պողպատի ֆազ. վերաբյուրեղացման տեսությանը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1986):

ՍԱԴՈՎՍԿՈՒ ԷՖԵԿՏ, պտտ. մեխ. մոմենտի առաջացումը մարմիններում, որոնք ճառագայթահարվում են էլիպսաձև բևեռացված լույսով: Պայմանավորված է մարմնին ֆոտոնների շարժման քանակի փոխանցմամբ, որն էլիպսաձև բևեռացված լույսում գրոյից տարբեր է: Հայտնաբերել է ռուս ֆիզիկոս Ա. Ի. *Սադովսկին* 1898–ին:

ՍԱԴՈՒԿԵՑԻՆԵՐ, **Սադովկեցիներ**, աղանդավոր. հոսանք Հուդայում մ. թ. ա. II–մ. թ. I դդ–ում: Հավատի հարցերում հակադրվելով *փարիսեցիներին*՝ ժխտել են ավանդույթներն ու բանավոր օրենքները, հոգու անմահության, հանդերձյալ կյանքի մասին և այլ ուսմունքներ, ընդունել միայն Մովսեսի «Օրինաց գիրքը»՝ *Հնգամատյանը*:

ՍԱԴՈՒՆ Ա ԱՐԾՐՈՒՆԻ, XII–XIII դդ–ում Մահկանաբերդի իշխան՝ Մահկանաբերդի *Արծրունիների* տոհմից (տես *Մահկանաբերդի իշխանություն*): *Միսիթար Գոշին* օժանդակել է Նոր Գետիկի վանքի (*Գոշավանք*) կառուցման գործում: Շին. աշխ–ներ է հովանավորել նաև Շխմուրատի վանքում:

ՍԱԴՈՒՆ Բ ԱՐԾՐՈՒՆԻ (ծ. թ. անհտ–1282), *Սադուն Ա. Արծրունու* թոռը: Արժանացել է *Հուլավու* խանի հովանավորությանը, նշանակվել (1260) *Սասուն* գավ–ի կառավարիչ: Բարձր դիրքի է հասել Վրաց Դեմետր թագավորի արքունիքում, ճանաչվել (1271–ից) աթաբեկ և ամիրսպասալար: Ամուսնացել է Դեմետրի քույր Թամարի հետ և ստացել Դմանիս ք–ը՝ շրջակայքով:

ՍԱԶ, լար. կամիթ. երաժշտ. գործիք: Տանձաձև իրանը (թթենուց կամ ընկուզենուց) ծածկված է ձայնադարձիչ անցքերով բարակ կափարիչով, կոթին՝ փարդաներ: Մետաղե լարերը բաժանված են 3 կամ 4 երկանդամ կամ եռանդամ ունիսոն խմբերի: 1925–ին Վարդան *Բունին* ստեղծել է Ս–երի ընտանիք: Տարածված է Կովկասում, Մերձ. Արևելքում:

ՍԱԶԱՅԻ (Աղաջան, Փառոյի Աղաջան, 1848–1917), աշուղ: Նվագել է ջութակ, հորինել և երգել հայ.: Հեղինակ է խոհ., խրատ., հայրենասիր. և քնար. երգերի: Գրառել է, հայ. փոխադրել և հրատարակել «Մելիք Աբով և Ղամար Սուլթան», «Ամրահ և Սալվի», հորինել «Արտաշես և Սաթենիկ», «Ծառուկ և Ծաղիկ», «Գառնիկ» երգախառն հեքիաթները:

ՍԱԶԱՆԴԱՐ, 1. *սազ* կամ ժող. որևէ այլ երաժշտ. գործիք նվագող երաժիշտ Այսրկովկասում: 2. Ժող. երաժշտ. գործիքների անսամբլ. կազմում (նվազագույնը)՝ թառ, քամանչա, դափ կամ դհոլ, 2 դուդուկ: Տարածված էր Հայաստանում, Վրաստանում, Իրանում, Մերձ. ու Միջին Արևելքում: Նվազացանկում՝ ժող. երգ և պար. գործեր, աշուղ. երգեր, մուղամներ:

ՍԱԶԱՆԴԱՐՅԱՆ Տաթևիկ Տիգրանի (1916–1999), երգչուհի (մեցցո–սոպրանո): ՀՀ (1947), ԽՍՀՄ (1956) ժող. արտիստ: Պրոֆ. (1970): Դավիթ *Խանջյանի* մայրը: 1937–69–ին՝ ԵՕԲԹ–ի մեներգչուհի (Փառանձեմ՝ Ա. Չուխաճյանի «Արշակ Բ», Ավմաստ՝ Ա. Սպենդիարյանի «Ավմաստ», Անանա՝ Ա. Հարությունյանի «Սայաթ–Նովա», ևն): Ս–ի արտահայտիչ ձայնը, վերամարմնավորման վարպետությունը, բեմ. վառ տաղանդը դրամատիկ. շունչ են հաղորդել նրա բեմ. կերպարներին: ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան (1997):

ՍԱՋԵՌԼԵՆԴ (Sutherland) Էդլ Ուիլբուր (1915–1974), ամերիկացի կենսաբան և դեղաբան: Կենդ. հյուսվածքներում հայտնաբերել է (1957) ցիկլիկ 3′, 5′ – ադենոզին–մոնոֆոսֆատը և հաստատել նրա դերը հորմոնների ազդեցության մեխանիզմներում: Աշխ–ներ ունի ածխաջր. փոխանակության վերաբերյալ: Նորելյան մրց. (1971):

ՍԱՋՈՆՈՎ Սերգեյ Դմիտրևիչ (1860–1927), ռուս դիվանագետ: 1910–16–ին՝ Ռուս. կայսրության ԱԳ նախարար: Ա. Կոլչակի և Ա. Դենիկինի կառ–յունների անդամ (1918–19): 1919–ից՝ վտարանդի: Հեղինակ է հուշերի (1927), որտեղ մեծ տեղ է հատկացրել Հայկ. հարցին ու հայկ. բարեներոգումների շուրջ տեղի ունեցած դիվանագիտ. բանակցություններին:

ՍԱՋՈՆՈՎԱ Նինա Աֆանասևնա (1916/17–2004), ռուս. դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1977): 1938–ից՝ Մոսկվայի Կարմիր բանակի կենտր. թատրոնի դերասանուհի: Աչքի է ընկել բնութագր., կատակերգ. (Կլավա՝ Ա. Ե. Մակայոնոկի «Լևոնիխան ուղեծրում», ևն), դրամատիկ. (Վասսա՝ Մ. Գորկու «Վասսա Ժելեզնովա», ևն) դերերով: Նկարահանվել է «Կանայք», «Իմ փողոցը», «Ապրում է այդպիսի տղա» և այլ ֆիլմերում:

ՍԱԹ, բուս. ծագման հանածո խեժ: Առաջացել է պալեոզոյի դարաշրջանում՝ փշատերև ծառերի խեժից՝ խեժաթթուների և տերպենների պոլիկոնդենսմամբ: Քիմ. բաղադրությունը՝ $C_{10}H_{16}O_4$ (բանաձևը մոտավոր է): Հանդիպում է կարմրագանակագույնի, հաճախ՝ դեղինի երանգներով: Կարծր.՝ 2–3, խտ.՝ 1,1 *գ/սմ*^{3}: Դիէլեկտրիկ է: Կիսաթանկարժեք քար է: Աշխարհում Ս–ի խոշորագույն հանքավայրը Ռուսաստանում է:

ՍԱԹԱԹՈՒՆ, $HOOC(CH_2)_2COOH$, անգույն բյուրեղ. նյութ է, $t_{հալ.}$՝ 188°C: Ս–ի աղերն ու էսթերները կոչվում են սուկցինատներ: Փոքր քանակներով պարունակվում է *սաթում*, գորշ ածխում ևն: Կիրառում են պոլիէսթեր. խեժեր, պլաստմասսաներ, ներկանյութեր ստանալու համար, օրգ. սինթեզում:

ՍԱԹԼԻԳԱՆՈՎ Թոքթոգուլ (1864–1933), ղրղըզ ակին, կոմպոզիտոր, երաժիշտ: Ղրղըզ գրկ–յան հիմնադիրներից: Հեղինակ է երգիծ. ստեղծագործությունների («Հինգ վարազ», «Վաշխառու Չաքըրբայը», «Էշեն–Կալպա» ևն), «Մնաս բարով, իմ ժողովուրդ», «Աքսորում» և այլ երգերի, գործիք. երաժշտության դաս. նմուշների (կյուեր):

ՍԱԹԼԵՋ, **Սաթլաջ** (ստորին հոսանքում՝ Փանջնադ), գետ Պակիստանում, Հնդկաստանում և Չինաստանում, Ինդոսի ամենամեծ վտակը (ձախից): Երկ.՝ 1450 *կմ*, ավազանը՝ 395 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ մոտ 500 *մ*^{3}*/վ*, առլն (ամոանը)՝ մոտ 20 հզ. *մ*^{3}*/վ*: Նավարկելի է առանձին հատվածներում: Ս–ի ափերին են Նանգալ, Բհիլաուր (Հնդկաստան), Բահավալպուր (Պակիստան) ք–ները:

ՍԱԹՅԱԳՐԱՀԱՄ, ոչ բոնի դիմադրության տեսություն Հնդկաստանում բրիտ. գաղութատիրության շրջանում: Մերժում է ուժային, այդ թվում՝ նաև զինված պայքարի մեթոդները և ընդունում պայքարի միայն խաղաղ ձևեր՝ քաղաքաց. անհնազանդություն, ցույցեր, գործադուլներ, հացադուլներ ևն: XX դ–ի սկզբին մշակել է Մ. *Գանդին*:

ՍԱԹՅԱՆ Աշոտ Մովսեսի (1906–1958), կոմպոզիտոր, դիրիժոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1947): Արամ *Սաթունցի* եղբայրը: Հեղինակ է երգերի («Մարտիկի երգը», «Աղբյուրի մոտ», «Կենաց երգ» ևն), երգչախմբի և սիմֆ. նվագախմբի համար «Գարնան երգ» կոնցերտ. վալսի, լար. կվարտետի (1936), «Արարատյան հովտի երգեր» վոկալ–սիմֆ. շարքի (1950), «Զանգեզուրի լեռներում» սիմֆ. պատկերների (1952), թատրոնի և կինոյի երաժշտության («Ռավիթ Բեկ», 1944, «Ում է ժպտում կյանքը», 1952, ևն): Կառլովի Վարիի միջազգ. կփ (1951), ԽՍՀՄ Պետ. (1952) մրց–ներ:

ՍԱԹՅԱՆ Արամ Արամի (ծ. 1947), կոմպոզիտոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2011): Պրոֆ. (1997): ՀԿՄ նախագահ (2016–ից): Արամ *Սաթունցի* որդին: Հեղինակ է «Փոքրիկ Յախեսը» (2013) օպերայի, «Լիլիթ»

(1997) ռոք–օպերայի, նաև սիմֆոնիաների, կոնցերտների, սիմֆ. և կամեր. գործերի, երգերի, թատրոնի և կինոյի երաժշտության: «Շոու և արտ բիզնես» ընկերակցության հիմնադիր–նախագահ (1999–ից):

Երիտասարդ կոմպոզիտորների համամիութ. ստուգատեսի դիպլոմ (1968, Մոսկվա), միութ. և հանրապետ. մրց–ների դափնեկիր, ՀԼԿԵՄ (1980), ՀԹԳՄ «Արտավազդ» (2013) մրց–ներ, ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2007), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1–ին աստիճանի (2017) շքանշան:

ՍԱԹՅԱՆ Մարլեն Ակիմի (ծ. 1930), երկրաբան: Երկրբ–հնքբ. գիտ. դ–ր (1979): ՀԽՍՀ վաստ. երկրաբան: Աշխ–ները վերաբերում են քարազիտ–յան տեկտոնիկայի, օֆիոլիթ. գոտիների առաջացման հարցերին: 1995–ից զբաղվում է ՀՀ–ում նավթագազ. հանքավայրերի որոնմամբ: ՌԴ Բնապահպան. (1999), Բնական (2003) ԳԱ–ների անդամ:

ՍԱԹՈՒՆՑ (Սաթյան) Արամ Մովսեսի (1913–1990), կոմպոզիտոր: ՀԽՍՀ ժող. արտիստ (1985): Աշոտ Մ. ***Սաթյանի*** եղբայրը, Արամ Ա. ***Սաթյանի*** հայրը: Հեղինակ է «Ատամնաբույժն արևելյան» երաժշտ. կատակերգության (ըստ Հ. Պարոնյանի, 1938), սիմֆ. պոեմների («Զանգեզուր», 1947, «Հավերժ հիշատակ», 1989), «Արևաշող Հայաստան» (1988) պար. սյուիտի, «Վերածնված Նահիյան երկրի երգերը» (1979) վոկալ–սիմֆ. շարքի, քանոնի և ժող. գործիքների նվագախմբի կոնցերտի (1987), թատրոնի և կինոյի երաժշտության ևն:

ՍԱԹՈՒՆՑ Ստեփան Քրիստափորի (1910–1985), ճարտ.: Քրիստափոր ***Ստեփանի Սարգսյանի*** որդին: Պրոֆ. (1970): Հեղինակ է հանգստյան տների՝ Գագրայում (1933–35), Ծղալտուբոյում (1935–37), կրկեսի շենքերի՝ Թբիլիսիում (1940, Ն. Նեպրինցևի, Վ. Ուրուշաձի հետ), Գորկիում (1949–54), Երևանում՝ շամպայն գինիների գործարանի (1949) և այլ կառույցների նախագծերի, Մոսկվայում՝ «Արարատ» ռեստորանի և սրճարանի ներքին հարդարանքի (1949, Կարո ***Հալաբյանի*** հետ) և այլ ձևավորումների:

ՍԱԺԻՆ Նիկոլայ Պետրովիչ (1897–1969), ռուս. մետաղագետ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1964): Սոց. աշխ. հերոս (1967): Աշխ–ները վերաբերում են հազվագյուտ մետաղներին, մաքուր և կիսահաղորդչ. նյութերին:

ԽՍՀՄ Պետ. (1946, 1952), Լենինյան (1961) մրց–ներ:

ՍԱԻԴ ՆՈՒՐԻ (1888–1958), Իրաքի վարչապետ՝ 1930–58–ին (ընդմիջումներով): Բաղդադի պակտի կազմ–յան ստեղծման նախաձեռնողներից: Սպանվել է 1958–ի հեղ–յան ժամանակ:

ՍԱԼ (անատոմ.), մարդու և կաթնասուն կենդանիների միջին ականջի լսող. ոսկրիկը: Դրսային ծայրով հոդավորվում է ***մրհիկի*** հետ, ներսայինով՝ ասպանդակի: Մասնակցում է ձայնի հաղորդմանը՝ արտաքին ականջից ներքին ականջ:

ՍԱԼԱԶԱՐ (Salazar) Անտոնիու դի Օլիվեյրա (1889–1970), Պորտուգալիայի Կառյան ղեկ.՝ 1932–68–ին: Ազգ. միություն կուս–յան հիմնադիր (1930): Սահմանել է ֆաշիստ. վարչակարգ, դարձել է Պորտուգալիայի փաստ. բռնապետը:

ՍԱԼԱԽՅԱՆ Հակոբ Նշանի (1922–1969), գրականագետ–քննադատ, մշակույթի գործիչ: 1954–58–ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար, 1959–69–ին՝ «Դրուժբա նարոդով» (ռուս.) ամսագրի գլխ. խմբ–ի տեղակալ: Հեղինակ է «Ն. Վ. Գոգոլ. քննադատական–կենսագրական ակնարկ» (1952), «Եղիշե Չարենց» (1957) մենագրությունների, Տ. Շևչենկոյի կյանքին ու գործունեությանը նվիրված «Ջինված մարգարեն» (1964) աշխ–յան:

ՍԱԼԱԿԱ (Salacca), **տառեխուկ**, ծովատառեխների ընտանիքի ձուկ: Երկ.՝ մինչև 20 *սմ*, կ. զ.՝ մինչև 75 *գ*: Ապրում է Բալթիկ ծովում և Շվեդիայի որոշ լճերի քաղցրահամ ջրերում: Արդյունագործ. ձուկ է:

ՍԱԼԱԿՐՈՒ (Salacrou) Արման (1899–1989), ֆրանսիացի դրամատուրգ: Հեղինակ է «Հյուրանոց «Ատլաս»» (1931) կատակերգություն–պամֆլետի, «Առասցի անծանոթուհին» (1936), «Յասման գիշերներ» (1946) և այլ դրամաների, «Դատարանի նախամուտքի առջև» (1974–76) հուշագրության:

ՍԱԼԱՀ ԱԴ–ԴԻՆ, **Սալահեդդին**, Յուսուֆ իբն Այուբ (1138–1193), Եգիպտոսի տիրակալ՝ 1171–ից: ***Էյուբյանների*** հարստության հիմնադիրը: 1169–ին՝ Եգիպտոսի վեզիր: Ֆաթիմյանների վերջին խալիֆի մահից հետո զավթել է (1171) իշխանությունը, իրեն հռչակել (1174) սուլթան: 1187–ի Հիթթինի (Պաղեստին) ճակատամարտում պարտության է մատնել խաչակիրներին: 1193–ին դեսպանություն է ուղարկել Լևոն Բ–ի մոտ՝ պահանջելով հանձնել Կիլիկիան և անձամբ ներկայանալ իրեն: Մերժում ստանալով՝ արշավել է Կիլիկիա, բայց ճանապարհին մահացել է:

ՍԱԼԱՄ (Salam) Աբդուս Մոհամմադ (1926–1996), պակիստանցի ֆիզիկոս–տեսաբան: ԽՍՀՄ ԳԱ արտ. թղթ. (1971), Լոնդոնի թագավոր. ընկ–յան (1959) անդամ: Կանխատեսել է (Լ. Դ. Լանդաուից, Յ. Լիից և Չ. Յունգից անկախ) թույլ փոխազդեցություններում համակցված զույգության չպահպանվելը և 2 տիպի նեյտրինոների գոյությունը: Էլեկտրամագնիս. և թույլ փոխազդեցությունների միացյալ տեսության հեղինակներից է (Գլեշոու–Վայնբերգ–Սալամի տեսություն):

Նոբելյան (1979, Ս. ***Գլեշոուի*** և Ս. ***Վայնբերգի*** հետ), Ռ. Օպենհեյմերի անվ. (1971) մրց–ներ, ԽՍՀՄ ԳԱ Մ. Վ. Լոմոնոսովի անվ. մեդալ (1983):

ՍԱԼԱՄԱՆԴՐՆԵՐ իսկական (Salamandridae), պոչավոր երկկենցաղների ընտանիք: Հայտնի է 45 տեսակ՝ Եվրասիայում և Հս. Ամերիկայում: Ապրում են ջրամբարների ափերին: Ս–ի շարքին են դասվում տրիտոնները, Ս. են կոչվում նաև այլ ընտանիքների մի քանի պոչավոր երկկենցաղներ (օր.՝ իսպոլինյան Ս., ակնոցավոր Ս.): Լաբորատոր կենդանիներ են:

ՍԱԼԱՄԱՆԿԱ (Salamanca), 1. ք. Իսպանիայի Կաստիլիա–Լեոն ԻՄ–ում, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 159 հզ. (2010): Կան տեսա– և աուդիոսարքերի արտադր–յան ձեռն–ներ: Հայտնի է մ. թ. ա. V դ–ից: Ս–ում են Պլաս Սայոր հրապարակը (XVIII դ.)՝ ռատուշայի հետ, ռոման. Հին տաճարը (XVI–XVII դդ.) և նրան հարող Նոր տաճարը (XVI–XVIII դդ.), Սան Էստեվան եկեղեցին (XVI–XVIII դդ.): Հին քաղաքը Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է: 2. Ք. Կենտր. Մեքսիկայում՝ Գուանահուատո նահց–ում: Բն.՝ 139 հզ. (2010): Նավթավերամշակման և նավթաքիմ. արդ–յան կենտրոն է:

ՍԱԼԱՄԱՆԿԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, աշխարհի հնագույն համալսարաններից և գիտամշակութ. կենտրոններից: Հիմնադրվել է 1218–ին Իսպանիայում Սալամանկա ք–ում, 1254–ից՝ համալսարանի (1–ինը՝ Եվրոպայում) կարգավիճակով: Միջնադարում Ս. հ–ում ուսումնասիրել են բնական գիտ–յուններ, զարգացրել արաբ. մշակույթի ավանդույթները: Ինկվիզիցիայի իշխանության շրջանում (XVI դ.) Ս. հ. միակն էր, որտեղ ուսումնասիրել են Կոպեռնիկոսի ***արևակենտրոն համակարգը***: Ս. հ–ում են սովորել Մ. Սերվանտեսը, Լոպե դե Վեգան, Ք. Կոլումբոսը և ուր.: 2016–ին ուներ շուրջ 30 հզ. ուսանող:

ՍԱԼԱՆԳԱՆԵՐ (Collocaliini), ջրածիծառների ենթակարգի թռչունների սեռ: Երկ.՝ 10–14 *սմ*: Հայտնի է 13 տեսակ՝ Հվ–արլ. Ասիայում, Ավստրալիայում և Հնդ. ու Խաղաղ օվկ–ների կղզիներում: Ապրում են գաղութներով: Բները շինում են բուս. նյութից կամ միայն կարծրացող թքից (այսպես կոչված ծիծեռնակի բույն):

ՍԱԼԱՆԴՐԱ, (Salandra) Անտոնիո (1853–1931), Իտալիայի վարչապետ՝ 1914–16–ին: 1914–ին Ս–ի կառ–յունը հայտարարել է ԱՀՊ–ում Իտալիայի չեզոքության մասին, սակայն 1915–ին Իտալիան ներքաշվել է պատերազմի մեջ՝ Անտանտի կողմում:

ՍԱԼԱՇԻ (Szálasi) Ֆերենց (1897–1946), հունգարացի ֆաշիստների առաջնորդ: Մինչև ԵՀՊ՝ ԳԾ սպա: 1944–45–ին՝ Հունգարիայի վարչապետ: 1946–ին Հունգարիայի դատարանը Ս–ին՝ որպես ռազմ. հանցագործի, դատապարտել է մահապատժի:

ՍԱԼԱՎԱԹ, ք. (1954–ից) ՌԴ Բաշկիրիայում՝ Բելայա գետի ափին: Երկթղ. հանգույց է: Բն.՝ 155,8 հզ. (2009): Հիմնադրվել է 1948–ին: Կոչվել է ***Սալավաթ Յուլաևի*** պատվին:

ՍԱԼԱՎԱԹ ՅՈՒԼԱԵՎ (1754–1800), բաշկիր բանաստեղծ: Բաշկիրիայի Ազգ. հերոս: Ե. Ի. ***Պուգաչովի*** գինակիցը: Բաշկիրիայում ղեկավարել է ապստամբությունը (1774): Մահացել է աքսորում: Հեղինակ է բանաստեղծությունների («Շակատամարտ», «Նետ», «Ձինվոր պատանուն», «Հարազատ երկիր», «Իմ Ուրալ», «Սոխակ» ևն):

ՍԱԼԱՐՆԵՐ (ինքնանվանումը՝ սալիր), թյուրք. ժողտ. Չինաստանի հս–ում՝ Ցինհայ, Հանսու և Սինցզյան–Ույղուր. ԻՄ–ում (104,5 հզ., 2000): Լեզուն՝ սալարերեն: Հավատացյալները սուննի մահմեդական են:

ՍԱԼԲԻ (Սահակյան Արամ Մ., 1884–1968), գրող, հաս. գործիչ, բժիշկ: 1922–ից՝ Ռումինիայում: Գործընկերների հետ գլխավորել է Բուխարեստի «Դեղլիու» հայկ. բուժարանը, 1942–45–ին՝ խորհրդ. ռազմագերիների բուժումը: 1944–46–ին՝ Բուխարեստի Հայ մշակույթի տան վարչության նախագահ: Հեղինակ է «Ալեակներ եւ Խլեակներ: Հայ վրանաքաղաքին տարեգրքի» (1919), «Մեր խաչը» (1921) պատմվածքների ժող–ի, «Պատգամաւոր շուները» (1945), «Դէպի հայրենիք: Թռչուններու հասարակապետութեան մէջ» [ա. թ.] մանկապատանեկան վեպերի:

ՍԱԼԳԱՆԻԿ Ռուդոլֆ Իոսիֆովիչ (1923–2017), ռուս. կենսաքիմիկոս: ՌԳԱ ակադ. (1992): 1995–ից՝ Հս. Կարոլինայի համալսարանում (ԱՄՆ): Աշխ–ները վերաբերում են գեների ակտիվության կարգավորմանը, արհեստ. մուտածնությանը, հակավիրուս. պատրաստուկների ստեղծմանը: Ստացել է արագ ծերացող առնետների տեսակ, որոնց բջիջներում բարձր է ազատ ռադիկալների քանակը: ԽՍՀՄ Պետ. (1979), Լենինյան (1990) մրց–ներ:

ՍԱԼԳԻՐ, գետ Ղրիմի Հանրապետությունում: Երկ.՝ 204 *կմ*, ավազանը՝ 3750 *կմ*^{2},

ջրի միջին ծախսը ստորին հոսանքում՝ 1,27 $u^3/վ$: Մերձակայքում է Սիմֆերոպոլ ք–ը: Ջրերն օգտագործում են ջրամատակարարման և ոռոգման համար:

ՍԱԼԵ, ք. Մարոկկոյում, գործնականում գրեթե միացել է Ռաբաթի հետ: Ունի օդանավակայան: Գործագործության և բրուտագործության կենտրոն է: Հիմնադրվել է XI դ–ում: Ս–ում պահպանվել են Մեծ մզկիթը (XI–XII դդ.), Աբու–լ–Հասանի և Բու–Ինանիայի մեդրեսեն, ան–Նուսակ պաշտամունք. համալիրը (բոլորը՝ XIV դ.):

ՍԱԼԵԽԱՐԴ, ք. (1938–33–ը՝ Օբդորսկ), ՌԴ Յամալո–Նենեց. ԻՄ վարչ. կենտրոնը: Նվինգստ՝ Պոլոյ գետի ափին: Բն.՝42,5 հզ. (2009): Կա ձկնապահածոների կոմբինատ: Ունի երկրագիտ. թանգարան: Հիմնադրվել է 1595–ին:

ՍԱԼԵՀ Ալի Աբդալլա (ծ. 1942), մարշալ, Եմենի նախագահ՝ 1994–2012–ին: 1990–94–ին՝ նախագահ. խորհրդի նախագահ: 1978–ից՝ Հս. Եմենի նախագահ, 1982–ից՝ Համընդհ. ժող. կոնգրեսի առաջնորդ:

ՍԱԼԵՌՆՈ (Salerno), ք. Իտալիայի հվ–ում՝ Կամպանիա մարզում, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Նվինգստ՝ Տիրենյան ծովափին: Բն.՝131 հզ. (2010): Զարգացած է սննդի արդ–յունը (լոլիկի, մրգի վերամշակում): Ունի համալսարան, հայտնի է իր միջնադար. բժշկ. դպրոցով: Ս–ում է Սբ Մատթեոսի տաճարը (XI դ., վերակառուցվել է XVIII–XIX դդ–ում):

ՍԱԼԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, մեխանիկայի առաձգականության տեսության բաժին. ուսումնասիրում է փոքր բարձր–յան (երկ–յան և լայն–յան համեմատությամբ) գլանաձև կամ պրիզմայաձև առաձգ. պինդ մարմինների՝ սալերի լարվածադեֆորմացված վիճակը: Հիմնված է այն վարկածի վրա, որ սալը, ըստ բարձր–յան, 2 հավասար մասերի բաժանող հարթությանն ուղղահայաց ուղիղները սալի դեֆորմացիայի դեպքում ուղղահայաց են մնում ուղիղ և կորացած միջին հարթությանը (մակերևույթին): Ս. տ–յան մշակման ոլորտում հիմնարար աշխ–ներ են կատարել Սերգեյ Համբարձումյանը (անիզոտրոպ Ս. տ.), Օգանեն Սապոնջյանը (սալերի ծռման խնդիրներ) և ուր.:

ՍԱԼԹԱՆՈՎ, Բոգդան Սալթանի (Թանդի Վերան՝ պարսկ., հայ.՝ Աստվածատուր, ռուս.՝ Բոգդան, ընդունելով ուղղափառ դավանանք՝ անվանակոչվել է Իվան Իվլիևիչ Սալթանով, հայ.՝ նաև Աստվածատուր Սալթանյան, ծ. թ. անհտ–1703), նկարիչ: Ալեքսեյ Միխայլովիչ ցարի հրավերով 1666–ին Նոր Զուղայից մեկնել է Մոսկվա: 1674–ին ստացել է ազնվականի կոչում: 1685–ից՝ Կրեմլի Զինապալատի գեղանկարչ. արվեստանոցի ղեկ.: Ռուս. արվ–ում արմատավորել է «կերպասե նկարչությունը», կամբջել XVII–XVIII դդ–ի ռուս. գեղանկարչության տարբեր միտումներ: Հեղինակ է դիմանկարների («Ալեքսեյ Միխայլովիչ ցարի դիմանկարը», 1682, ևն), թեմատիկ պատկերների, սրբանկարների («Տիրամայրը», «Համբարձում», «Ահեղ դատաստան», «Խաչից իջեցնելը» ևն), նկարազարդումների («Սիբիլլաների գիրքը», 1672–73), պալատների ձևավորումների ևն: Նրա էսքիզներով պատրաստվել են կիրառ. արվ–ի բազմաթիվ իրեր: Ս. ղեկավարել է Կրեմլի մի շարք շին. աշխ–ներ (ռուս. իրականության մեջ առաջին հաղթակամարի կառուցումն ու ձևավորումը 1696–ին ևն):


ՍԱԼԻԳԻՆ (Սալիգա) Վալերի Իվանովիչ (ծ. 1938), տեղեկագիտ–յան բնագավառի ռուս գիտնական: ՌԳԱ թղթ. անդամ (1991): Աշխ–ները վերաբերում են արդ. համալիրների կառավարման հարմարվող. նույնականացման համակարգերի սինթեզին, նմուշների ճանաչման և տվյալների մշակման դասակարգում. ալգորիթմների նախագծման հարցերին: ԽՍՀՄ (1989), ՌԴ (1995) Պետ. մրց–ներ:

ՍԱԼԻԵՐԻ (Salieri) Անտոնիո (1750–1825), իտալացի կոմպոզիտոր, դիրիժոր: Հեղինակ է օպերաների («Արմիդա», 1771, «Ճանաչված Եվրոպան», 1778, ևն), օրատորիաների, գործիք. երկերի: Ա. Ս. Պուշկինի «Մոցարտ և Սալիերի» ողբերգության հիմքում Ս–ի՝ Վ. Ա. Մոցարտին թունավորելու լեգենդն է: Աշակերտներից են Լ. վան Բեթհովենը, Ֆ. Շուբերտը, Ֆ. Լիստը:


ՍԱԼԻՆՍԿԻ Աֆանասի Դմիտրևիչ (1920–1993), ռուս դրամատուրգ: «Տեատր» (ռուս.) ամսագրի գլխ. խմբ. (1972–82, 1987–ից): Հեղինակ է «Թմբկահարուհին» (1958), «Քարեր ափի մեջ» (1965), «Սաբրիա» (1969), «Համբավ» (1980) դրամաների, «Անցում ամառային ժամանակի» (1983), «Առակ փախստական ուսանողուհու մասին» (1987) կատակերգությունների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1984):

ՍԱԼԻՔԻՆՆԵՐ (սելիշի), հնդկացի ժողովների խումբ Կանադայի հվ–արմ–ում և ԱՄՆ–ի հս–արմ–ում: Ընդհ. թվաքանակը՝ 40 հզ. (2010): Լեզուն՝ սալիշերեն: Հավատացյալները կաթոլիկ և ուղղափառ են:

ՍԱԼԻՑԻԼԱԹԹՈՒ, *օրթո*–հիդրօքսիբենզոյական թթու, արոմատիկ օքսիթթու, անգույն բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 159 °C: Կիրառում են ներկանյութերի, դեղանյութերի և հոտավետ նյութերի արտադր–յան, սննդի արդ–յան (պահածոյացման ժամանակ), բժշկության (հականեխիչ ևն) մեջ:



ՍԱԼԻՑԻԼԱՅԻՆ ԱԼԴԵՀԻԴ, *օրթո*–հիդրօքսիբենզալդեհիդ, նշի դառը հոտով, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 196°C: Կիրառվում է բժշկության մեջ՝ որպես հականեխիչ միջոց՝ արտաքին օգտագործման համար:



ՍԱԼԻՑԻԼԱՅԻՆ ՄԵԹԻԼ, 1. $HOC_6H_4CH_2OH$, անգույն բյուրեղ. նյութ է, $t_{հալ.}$՝ 86°C: 2. Սալիցիլաթթվի լուծույթն էթիլ սպիրտում, կիրառվում է բժշկության մեջ՝ որպես հականեխիչ միջոց՝ արտաքին օգտագործման համար:

ՍԱԼԼԱՆԹՅԱՆ Միքայել (Հովակիմ, 1782–1851), քերական, մանկավարժ, եկեղեց. գործիչ: 1810–ից՝ արք.: 1810–22–ին՝ Վրաստանի, Աստրախանի և Ղրիմի կաթոլիկ հայերի հոգևոր առաջնորդ: Տիրապետել է լատ–ին, գերմ–ին, ֆրանս–ին, արաբ–ին: Հեղինակ է «Քերականութիւն գրաբառ լեզուիս հայոց…» (1817) դասագրքի, «Կրօնագիտութիւն քրիստոնէական» (1831), «Հրահանգ ճարտասանութեան կամ ճառարանութեան» (1836) երկերի:

ՍԱԼԼԵ (Sallé) Մարի (1707–1756), բալետի ֆրանսիացի արտիստ, բալետմայստեր: 1725–52–ին (ընդմիջումով) հանդես է եկել Լոնդոնում, Փարիզի օպերայում, պալատ. ներկայացումներում: Բեմադրել է «Պիգմալիոն» (1734) մնջախաղ–բալետը, «Բաքոս և Արիադնե» բալետը, պարեր՝ Գ. Ֆ. Հենդելի օպերաներում: Կատարել է գլխ. դերապարեր օպերա–բալետներում: Առաջինն է հրաժարվել կեղծամից:

ՍԱԼԼՈՒՍՏԻՈՍ (Sallustius) Գայոս Կրիսպոս (մ. թ. ա. 86–մ. թ. ա. մոտ 35), հռոմեացի պատմագիր: Մասնակցել է մ. թ. ա. 49–45–ի քաղաքաց. պատերազմին՝ Հուլիոս *Կեսարի* կողմում: Մեզ են հասել Կեսարին գրած նամակները, «Կատիլինայի դավադրության մասին» և «Յուգուրթական պատերազմը» երկերը: Ս–ի «Պատմություններ»–ից (5 գիրք, ընդգրկել են մ. թ. ա. 78–66–ի իրադարձությունները, գրել է 36–35–ին) որոշ պատառիկներ տեղեկություններ են հաղորդում *Տիգրան Բ Մեծի* օրոք տեղի ունեցած հայ–հռոմ. պատերազմի և Հայաստանի վերաբերյալ:

ՍԱԼՄԱՆ ՍԱՎԵՋԻ Ջալալ ադ–Դին (1300–1375), պարսիկ բանաստեղծ: Հեղինակ է քասիդների, քնար. գազելների, «Սատովակի գիրքը», «Ջամշիդը և Խորշիդը» (Նիզամիի «Խոսրով և Շիրին» պոեմի քնար. պատասխանը), «Գիրք բաժանման մասին» մեսնևիների:

ՍԱԼՄԱՆԱՍԱՐ I, Ասորեստանի թագավոր՝ մ. թ. ա. 1274–45–ին (այլ տվյալներով՝ մ. թ. ա. 1280–61–ին): Արշավել է Հայկ. լ–աշխարհ՝ Ուրուատրի երկրի ցեղ. միությունների վրա, գրավել 8 երկիր և այլ վայրեր: Հաջող պատերազմներ է մղել Խեթ. պետության, Եգիպտոսի, Միտանիի (կործանել է Միտանին), Բաբելոնի դեմ:

ՍԱԼՄԱՆԱՍԱՐ III, Ասորեստանի թագավոր՝ մ. թ. ա. 860/859–825/824–ին: Հաջորդել է հորը՝ *Աշուրնասիրպալ II*–ին: Վարել է նվաճող. քաղ–յուն, արշավել է Հայկ. լ–աշխարհ, պատերազմել Ուրարտուի դեմ:

ՍԱԼՄԱՆԱՍԱՐ V, Ասորեստանի թագավոր՝ մ. թ. ա. 736–722–ին: *Թիգլաթպալասար III*–ի որդին և հաջորդը: Օգտվելով Ս. V–ի ռազմ. անհաջողությունից՝ հակառակորդները գահընկեց են արել նրան՝ գահ բարձրացնելով կրտսեր եղբորը՝ *Սարգոն II*–ին:

ՍԱԼՄԱՍԼՅԱՆ Արմենակ Հակոբի (1888–1971), մատենագետ: Իրավաբ. գիտ. դ–ր (1922): 1940–47–ին ղեկավարել է Փարիզի ազգ. մտնդ–ի արլ. լեզուների բաժինը, 1951–71–ին՝ *Նուբարյան մատենադարանի* տնօրեն: Հեղինակ է «Հայկական մատենագիտութիւն» (1946, 2 լրց. վերահրտ.՝ 1969) աշխ–յան, որն ընդգրկում է հայագիտ–յան բոլոր բնագավառներում օտար լեզուներով մինչև 1965–ը լույս տեսած գրքերի մատենագիտ–յունը:

ՍԱԼՄԱՍ, **Տարավնո**, գետ Իրանում՝ Ուրմիա լճի ավազանում: Երկ.՝ մոտ 90 *կմ*: Սկիզբ է առնում Զագրոսի լանջերից, թափվում Ուրմիա լիճը: Հորդանում է գարնանը:

ՍԱԼՄԱՍ, **Սաղամաս**, ք. Պարսկահայք նահանգի *Զարևհական* գվռ–ում՝ համանուն գետի ձախ ափին: Մեծ Հայքի բաժանումից (387) հետո մտել է Արլ. Հայաստանի, 428–ից՝ Հայկ. մարզպանության մեջ: X դ–ի սկզբին արաբներից ազատագրել և Վասպուրականի թագավորությանն են միացրել Արծրունիները: XVI դ–ում անցել է Սեֆյան Պարսկաստանին: XIX դ–ի սկզբին ունեցել է 1200 տուն բն., գերազանցապես՝ հայեր: XX դ–ի սկզբին քաղաքում բնակվել է 700 հայ, իսկ Ս–ի մահալի շուրջ 30 գյուղում՝ 10 հզ.: ԱՀՊ–ում թուրք. զորքերի Պարսկաստան ներխուժման հետևանքով Ս–ի և շրջակա գ–երի հայերի մեծ մասը հարկադրաբար հեռացել է

այլ վայրեր. վերջնականապես Ս. լքել են 1950-ական թթ-ին:

ՍԱԼՄԱՍՏԻ ԼԵՌՆԵՐ, Հայկ. լ-աշխարհում, Ուրմիա լճի և Արաքս գետի ջրբաժան շղթան: Սկսվում է Զագրոսի լ-ների Սուրովա գագաթից, ձգվում է արմ-ից արլ. մոտ 90 *կմ* երկ-յամբ, բարձր.՝ 2400 *մ*:

ՍԱԼՄՈՆԵԼՆԵՐ [ամերիկացի ախտաբան Դ. Է. Սալմոնի (1850–1914) անունով], աղիք. ցուպիկաձև, ոչ սպորակիր բակտերիաների սեռ: Սովորաբար շարժուն են, օդակյաց կամ պայման. անօդակյաց: Շատերն ախտածին են. մարդու և կենդանիների *սալմոնելոզների*, մարդու որովայն. տիֆի և պարատիֆի հարուցիչներ են:

ՍԱԼՄՈՆԵԼՈԶՆԵՐ (ամերիկացի ախտաբան Դ. Է. Սալմոնի անունից), մարդկանց և կենդանիների սուր վարակիչ աղիքն. հիվանդություն: Հարուցիչները սալմոնելներն են: Մարդկանց Ս-ի ժամանակ նկատվում են ջերմաստիճանի բարձրացում, փսխում, լուծ, կենդանիների դեպքում՝ նաև վիժումներ: Վարակվում են մսի, հիվանդ թռչունի ձվի և այլ մթերքներով:

«ՍԱԼՅՈՒՏ», ԽՍՀՄ ուղեծրակայանների սերիա 1971–83-ին (արձակվել են 7-ը)՝ երկրամերձ ուղեծրով թռչելու համար: Հանդերձվել են տիեզ. տարածության բժշկականսբ. և տեխ. հետազոտության սարքերով: Երկիր վերադարձ չի նախատեսվել. անձնակազմերը տեղ հասցվել և փոխարինվել են «Սոյուզ» և «Սոյուզ Տ» տիեզերանավերով, վառելիքը և այլ բեռներ՝ «Պրոգրես» բեռնատարով:

ՍԱԼՆԱՋԱՐՅԱՆ Աշոտ Բորիսի (ծ. 1958), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (2003), պրոֆ. (2005): Աշխ-ները վերաբերում են արժեթղթերի տնտեսագիտ. բովանդակությանը, շուկայի էությանը, ենթակառուցվածքներին և ՀՀ-ում դրանց դրսևորումների առանձնահատկություններին:

ՍԱԼՆԱՊԱՏԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՎԱՆՔ, ճարտ. համալիր Վանից մոտ 6 *կմ* հվ-արլ.՝ Վարագա լ-ան ստորոտի Զառնապատ ձորակում: Հիշատակվում է XIII դ-ից: Սբ Աստվածածին եկեղեցին (XIII դ.) մեկ զույգ մույթերով գմբեթավոր դահլիճ է՝ խորանի 2 կողմերում ավանդատներով: Սբ Կարապետ եկեղեցին նույնպես գմբեթավոր դահլիճ է՝ առանց ավանդատների: Երկուսն էլ ավերակ են, կանգուն է Սբ Հռիփսիմե մատուռը:

ՍԱԼՆԱՋՈՒՐ, Ռո, գետ Հայկ. լ-աշխարհում, Գարզանսուի վտակը (Արմ. Տիգրիսի ավազան): Երկ.՝ մոտ 20 *կմ*: Հոսում է Սալնասար և Սաննասար լ-ների միջև ընկած գոգհովտով:

ՍԱԼՆԻԿՈՎ, Վլադիմիր Վալերիանովիչ (ծ. 1960), ռուս լողորդ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1978): Օլիմպ. խաղերի քառակի (1980), աշխարհի (1978, 1982), Եվրոպայի (1977, 1981, 1983) և ԽՍՀՄ (1978–87) չեմպիոն՝ տարբեր երկ-յուններում:

ՍԱԼՆՈ ՁՈՐ, **Սալաձոր**, գվո *Աղձնիք* նահանգ-ում: Ամենայն հավանականությամբ՝ կենտրոնը եղել է համանուն ավանը (XX դ-ի սկզբին՝ Սլընձոր կամ Սալանսուր): Ուշ միջնադարում կոչվել է «Բողնարդու երկիր»: Հետագայում մտել է *Մոկքան* գվո-ի մեջ:

ՍԱԼՈՆԱՅԻՆ ԱՐՎԵՍՏ, սալոնասակաղեմ. արվ. (< Սալոններ – պաշտոն. գեղ. ցուցահանդեսներ 1737–48-ին Ֆրանսիայում Լուվրի «Քառակուսի սալոնում»), XIX դ-ի–XX դ-ի սկզբի արվ.՝ հարմարեցված ակադեմ. ուսմունքի քաղքենի. ճաշակին, յուրաքանչյուր նորաձև հոսանքներին:

ՍԱԼՈՆԻԿ, **Թեսալոնիկե**, ք. Հունաստանում՝ Էգեյան ծովի Թերմայիկոս ծոցի ափին, Կենտր. Մակեդոնիա մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 346 հզ., ագլոմերացիայում՝ 1 մլն (2010): Ծով. խոշոր նավնգստ է, որը Բալկանյան թ-կղզում տարանցման ուղի է: Ունի օդանավակայան: Զարգացած է նավթավերամշակման և նավթաքիմ., տեքստիլ, դեղագործ., սննդի, ցեմենտի արդ-յան ճյուղերը, մեքենաշինությունը: Ս-ում կա գիտատեխ. պարկ (բարձր տեխնոլոգիաների արտադր-յուն և գիտ. հետազոտությունների փորձար-կոնստրուկտոր. մշակումներ): Հիմնադրվել է մ. թ. ա. 315-ին: Բյուզանդիայում իր նշանակությամբ 2-րդ քաղաքն էր Կ. Պոլսից հետո: XIII դ-ում Թեսալոնիկեի պետության մայրաքաղաքն էր (Լատ. կայսրությունում): 1387-ին Ս. գրավել են թուրքերը: 1913-ից Հունաստանի կազմում է: Ս-ում պահպանվել են IV դ-ի սկզբի հինհոմ. պալատ. համալիրի մնացորդները, IV դ-ի վերջի ամրոցի պատեր և աշտարակներ: Միջնադար. ճարտ. հուշարձաններից են ամրոցը (XIV դ.), բյուզ. Սբ Գեորգիոսի (IV դ-ի վերջ), Սբ Դիմիտրիոսի (V–VII դդ., խճանկարները՝ VII դ., որմնանկարները՝ IX–XIV դդ.), Սբ Սոֆիայի (717–747) տաճարները:

Ս-ում հայկ. ստվար համայնք է եղել դեռևս IX–X դդ-ում, սակայն այն չի պահպանվել: Նոր համայնքը կազմավորվել է XIX դ-ի 50-ական թթ-ին, ստվարացել Մեծ եղեռնի տարիներին և 1988–90-ական թթ-ին ՀՀ-ից արտագաղթի հետևանքով:

ՍԱԼՈՐԵՆԻ (Prunus), **շլորենի**, վարդազգիների ընտանիքի թփեր կամ ծառեր: Հայտնի է մոտ 30 տեսակ, ՀՀ-ում՝ 3 վայրած (փշավոր, մամխի և սովոր.)՝ Լոռու, Տավուշի, Արագածոտնի, Սյունիքի և այլ մարզերում: Սովոր. Ս. և դամբուլը մշակվում են գրեթե բոլոր մարզերում: Օգտագործվում է թարմ և վերամշակված (չիր, կոմպոտ, մուրաբա, ջեմ, հյութ ևն): Ս-ու հայկ. սորտերից են Ալբուխարին, դեղնաշլորենին, Վազիրին, Կանաչկենին, սև խոշոր դամբուլենիները և շրջանացված մի շարք սորտեր:

ՍԱԼՊԵՐ (Salpidae), պատյանավորների ենթատիպի ծով. քորդավոր կենդանիների դաս: Երկ.՝ մի քանի *մմ*–33 *սմ*: Հայտնի է մոտ 25 տեսակ՝ տարածված բոլոր օվկ-ներում (բացի Սառուցյալից): Ազատ լողացող ձևեր են: Բողբոջմամբ առաջացնում են գաղութներ՝ երբեմն մի քանի հարյուր առանձնյակներով:

ՍԱԼՋԱՐԴ, 1. **կոնտուզիա** (լատ.՝ contusio – ջարդվածք), օրգանիզմի ընդհ. վնասումը, առավել հաճախ՝ օդ. հարված. ալիքի ազդեցությամբ՝ առանց արտաքին մաշկածածկույթի ամբողջականության խախտման: Դրսևորվում է գիտակցության կորստով (ընդհուպ մինչև *կոմա*), հետազա անհիշությամբ (ամնեզիա), գլխացավերով, գլխապտույտով, լսողության և խոսքի խանգարումներով: 2. Մարմնի հյուսվածքների և օրգանների վնասումը բութ հարվածից՝ առանց մաշկածածկույթի ամբողջականության խախտման:

ՍԱԼՍՈՆ (Sulston) Ջոն (ծ. 1942), անգլիացի մոլ. կենսաբան: Կլոր որդերի օրինակով ապացուցել է, որ բոլոր բջիջներն անցնում են կիսման ու տարբերակման միևնույն ծրագրով և մահանում են իրենց ոչնչացման ծրագրին համապատասխան: Նոբելյան մրց. (2002, Ս. *Բրենների* և Ռ. *Հորվիցի* հետ):

ՍԱԼՎԱԴՈՐ (El Salvador), **Էլ Սալվադորի Հանրապետություն** (República de El Salvador), պետություն Կենտր. Ամերիկայում: Տարածքը՝ 20,04 հզ *կմ*², բն.՝ 7,2 մլն (2009, հիմնականում՝ սալվադորցիներ, ինչպես նաև հնդկացիներ): Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է: Քաղաք. բն.՝ 61 % (2008): Պետ. լեզուն՝ իսպ.: Մայրաքաղաքը՝ *Սան Սալվադոր*: Վարչականորեն բաժանված է 14 դեպարտամենտի: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ օրենսդիր ժողովը: Ս. ագրար. զարգացող երկիր է: ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 7,1 հզ. ԱՄՆ դոլար է: Արտահանում են սուրճ, էթանոլ, քիմ. ապրանքներ: Դրամ. միավորը՝ ԱՄՆ դոլար: Երկրի մեծ մասն զբաղեցնում է հրաբխ. բարձրավանդակը (բարձր.՝ 2385 *մ*, Սանտա-Անա հրաբուխ): Առավել ակտիվ հրաբուխը՝ Իսալկո: Հս-ում տեկտ. սարահարթն է, որով հոսում է Լեմպա գետը: Հաճախակի են ուժեղ երկրաշարժերը: Ս-ի տարածքը XVI դ-ում նվաճել են իսպանացիները: 1810–26-ին Ամերիկայում իսպ. գաղութների անկախության համար մղված պայքարով 1821-ից Ս. ձեռք է բերել անկախություն: 1823–39-ին մտել է Կենտր. Ամերիկայի նահանգ-ների կազմ, 1841-ից անկախ պետություն է: 1980–92-ին տեղի են ունեցել քաղաքաց. պատերազմներ, որոնց հետևանքով սպանվել է մոտ 75 հզ. մարդ, արտագաղթել՝ 1 մլն: 1990-ին սկսվել են բանակցություններ Ազգ. ազատագր. ճակատի և Ս-ի Կառ-յան միջև, և 1991-ին հաստատվել է զինադադար: 1990-ական և 2000-ական թթ-ին սկսվել է սուր պայքար ձախերի և աջերի միջև: Նախն. ընտրություններում հաղթել են ձախերը:

ՍԱԼՎԱԴՈՐ (Salvador), **Բահիա** (Bahia), ք., Բրազիլիայի Բահիա նահանգ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 3 մլն, ագլոմերացիայում՝ 3,9 մլն (2010): Տրանսպորտ. խոշոր հանգույց է, նավնգստ՝ Ատլանտ. օվկ-ի ափին: Ունի օդանավակայան: Գործարար., մշակութ. և զբոսաշրջության կենտրոն է: Արդ-յան կարևոր ճյուղը շին. արդ-յունն է: Կան գեղարվ-ի և այլ թանգարաններ: Հիմնադրվել է 1549-ին: Մինչև 1763-ը եղել է Բրազիլիայի մայրաքաղաքը: Պահպանվել են XVI–XVIII դդ-ի ամրություններ, եկեղեցիներ, պալատներ: Պատմ. կենտրոնը Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՍԱԼՎԱԴՈՐՅԻՆԵՐ, ժողդ, Սալվադորի հիմն. բնակչությունը (5,5 մլն, 2010): Լեզուն՝ իսպ.: Հավատացյալները կաթոլիկ են:

ՍԱԼՎԻՆԻ (Salvini) Տոմազո (1829–1915), իտալացի դերասան: Նրա ստեղծագործությունը XIX դ-ի բեմարվ-ի գագաթնակետն է: Հռչակվել է Օթելլոյի (Վ. Շեքսպիրի «Օթելլո») և Սավուղի (Վ. Ալֆիերիի «Սավուղ») դերակատարումներով: Ս. ծանոթ է եղել Պ. Ադամյանի հետ:

ՍԱԼՏԱ (Salta), ք. Արգենտինայում, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 558 հզ. (2010): Ունի օդանավակայան: Ճարտ. ուշարձանները XVII–XVIII դդ-ի են: Հիմնադրվել է 1582-ին:

ՍԱԼՏԻԼՈ (Saltillo), ք. Մեքսիկայի հս-արլ-ում, Կոաուիլա նահանգ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 683 հզ. (2010): Լ-հանք. (անագ, արծաթ) արդյունահանման շրջանների

կենտրոն է: Ճարտ. հուշարձանները XVIII դ–ի են: Հիմնադրվել է XVI դ–ի վերջին:

ՍԱԼՏԻԿՈՎ (Սալթիկյան) Ռուբեն Անդրեյի (1909–1978), իմունաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1966): Բժշկ. ծառայության գնդ.: Սարգիս *Սալտիկովի* եղբայրը: Աշխ–ները վերաբերում են հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների դեմ կենդանի վակցինայի մշակման, իմունիտետի մեխանիզմների, արդյունավետ իմունացման լուսաբանման հարցերին:

ՍԱԼՏԻԿՈՎ Սարգիս Անդրեյի (1905–1983), մետաղագետ, մետաղաբան: Պրոֆ.: ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ: Տարածաչափ. մետաղաբանության հիմնադիրը: Ռուբեն *Սալտիկովի* եղբայրը: Աշխ–ները վերաբերում են մետաղների ջերմ. մշակմանը: Առաջինն է առաջարկել սիլիցիում պարունակող երկաթ–ածխածին համաձուլվածքի վիճակի կայուն դիագրամ: Մշակել է գորշ չուգունի կոփման տեսություն և ջերմ. մշակման հանձնարարակարգ: Ս–ի «Տարածաչափական մետաղաբանություն» (ռուս., 1976) բուհ. դասագիրքը թարգմանվել է անգլ., գերմ., չեխ. և այլ լեզուներով: ՀԽՍՀ Պետ մրց. (1974):

ՍԱԼՏԻԿՈՎ–ՇՉԵԳԴՐԻՆ Միխայիլ Եվգրաֆովիչ (Սալտիկով, կեղծանունը՝ Ն. Շչեդրին, 1826–1889), ռուս գրող, հրապարակախոս: 1869–84–ին՝ «Օտեչեստվենե զապիսկի» (ռուս., մինչև 1878–ը՝ Ն. Ա. Նեկրասովի հետ) խմբ.: Հեղինակ է «Նահանգական ակնարկներ» (1856–57), «Պոմպադուրներ և պոմպադուրուհիներ» (1863–74), «Հեքիաթներ» (1882–86), «Արտասահմանում» (1880–81), «Ամենաիմաստուն տառեխ և չհիշող խոյ: Առակներ» (հայ.՝ 1892) ժող–ների, «Մի քաղաքի պատմությունը» (1869–70, հայ.՝ 1934) երգիծ. վեպի, «Պարոնայք Գոլովլյովներ» (1875–80, հայ.՝ 1977) սոցիալ–հոգեբ. վեպ–ժամանակագրության: Հայ. հրատարակվել են նաև «Գիւղական վարժուհի» (1891) պատմվածքը, «Պոշեխոնյան անցյալը» (1952) վեպը, «Ընտիր երկերը» (հ. 1–2, 1934–35, հ. 1–3, 1951–52):

ՍԱԼՏՈ (Salto), ք. Ուրուգվայում՝ Արգենտինայի սահմանին, համանուն դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 106,3 հզ. (2010): Նվինգստ՝ Ուրուգվայ գետի ափին: Տստ–յան հիմն. ուղղությունները՝ զբոսաշրջություն և առևտուր:

ՍԱԼՏՈ, **սալտո–մորտալե** (իտալ.՝ salto – թռիչք, mortale – մահացու), մարզիկի լրիվ պտույտ օդում՝ տեղից, վազքից, ճոճաձողից ու զուգափայտից թռչելիս՝ սպորտում և կրկեսում: Լինում են դեպի առաջ, դեպի հետ, կողքի վրա, կրկնակի, եռակի ևն:

ՍԱԼՈՒԻՆ, գետ Չինաստանում, Մյանմայում և Թաիլանդում, մասնակիորեն կազմավորում է Մյանմայի և Թաիլանդի սահմանը: Երկ.՝ 3200 *կմ*, ավազանը՝ 325 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ մոտ 6700 *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Տիբեթի բարձրավանդակից, թափվում Անդամանյան ծովը: Նավարկելի է ստորին հոսանքում: Գետաբերանին է ծով. նվինգստ Սալամյանը:

ՍԱԽԱԼԻՆ, կղզի Ասիայի արլ. ափի մոտ՝ Օխոտի և Ճապոն. ծովերի միջև: Մայրցամաքից բաժանվում է Թաթարը. նեղուցով: Տարածքը՝ 76,4 հզ *կմ*^{2}, երկ.՝ 948 *կմ*, բարձր.՝ մինչև 1609 *մ*: 1855–ին Ս. Ռուսաստանի և Ճապոնիայի ընդհ. տիրույթ էր, 1875–ից՝ միայն Ռուսաստանի: 1905–ին Հվ. Ս. անցել է Ճապոնիային, 1945–ին վերադարձվել է:


ՍԱԽԱԼԻՆԻ ԾՈՒՅ, Օխոտի ծովի, Եվրասիա մայրցամաքի արլ. ափերի և Սախալինի կղզու հս. մասի միջև: Լայն.՝ մինչև 160 *կմ*: Կա ձկնաբուծություն: Նվինգստ՝ Մոսկալվո:

ՍԱԽԱԼԻՆԻ ՄԱՐԶ, ՌԴ Հեռավորարլ. դաշն. օկրուգի կազմում: Տարածքը՝ 81,7 *կմ*^{2}, բն.՝ 514,5 հզ. (2009), քաղաք. բն.՝ 78,2 %: Ունի 17 շրջան, 15 քաղաք, 5 քտա: Վարչ. կենտրոնը՝ Յուժնո–Սախալինսկ: Կազմավորվել է 1932–ին: Ափերը ողողվում են Օխոտի և Ճապոն. ծովերի ու Խաղաղ օվկ–ի ջրերով: Ներառում է Սախալինն. և Կուրիլ. կղզիները: Տստ–յան առաջատար ճյուղը վերամշակող արդ–յունն է, զարգացած է նաև մսատու տավարաբուծությունը, խոզաբուծությունը, գազանաբուծությունը, եղջերվաբուծությունը, բանջարաբուծությունը: Գլխ. նվինգստներն են Կորսակովը, Խոլմսկը, Նևելսկը, Ուգլեգորսկը:

ՍԱԽԱՄԱ (Sajama), հանգած հրաբուխ Արմ. Անդյան Կորդիլիերիայի արլ. ստորոտին՝ Բոլիվիայում: Բարձր.՝ 6520 *մ*:

ՍԱԽԱՐԱԶ, **ինվերտազ**, հիդրոլազների խմբի ֆերմենտ. սախարոզը ճեղքում է խաղողաշաքարի (գլյուկոզ) և պտղաշաքարի (ֆրուկտոզ): Պարունակվում է աղիքահյութում, ուղեղում, լեյկոցիտներում, բույսերում և միկրոօրգանիզմներում: Ակտիվ գործում է թթվային միջավայրում:

ՍԱԽԱՐԻՆ, *օրթո*–սուլֆաբենզոլաթթվի իմիդ, քաղցր համով (սախարոզից քաղցր է 400–500 անգամ), անգույն բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 224–226°C: Շաքարի փոխարինիչ է շաքարախտով հիվանդների համար: Չի յուրացվում օրգանիզմում (արտազատվում է մեզի հետ):



ՍԱԽԱՐՈԶ, տես *Եղեգնաշաքար*:

ՍԱԽԱՐՈՎ Անդրեյ Դմիտրևիչ (1921–1989), ռուս. ֆիզիկոս–տեսաբան, հաս. գործիչ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1953): Ջրածն. ռումբի ստեղծողներից (1953): Աշխ–ները վերաբերում են մագնիս. հիդրոդինամիկային, պլազմայի ֆիզիկային, ԳՋՄՍ–ին, տարր. մասնիկների, ատղաֆիզիկայի և գրավիտացիայի հարցերին: 1960–70–ականներին՝ իրավապաշտպան շարժումների առաջնորդներից: Բողոքել է ԽՍՀՄ զորքերն Աֆղանստան մտցնելու դեմ, որի համար զրկվել է Սոց. աշխ. հերոսի (1954, 1956, 1962) կոչումից, ԽՍՀՄ Պետ. (1953), Լենինյան (1956) մրց–ներից ու պետ. պարգևներից և աքսորվել Գորկի (այժմ՝ Նիժնի Նովգորոդ): Աքսորից վերադարձել է 1986–ին: 1989–ին ընտրվել է ԽՍՀՄ ժող. պատգմ., առաջարկել ԽՍՀՄ նոր սահմանադրության նախագիծ: Նրան մեծապես աջակցել է կինը՝ Ելենա Բոները (1923–2011, հայրը՝ Լևոն Սարգսի Քոչարյան, գնդապետ, զոհվել է 1938–ին, մայրը՝ Հռութ Գևորգի Բոներ, 1900–1987): Եղել է Երևանում և Ստեփանակերտում, պաշտպանել Արցախյան ազատագր. պայքարը: Խաղաղության Նոբելյան մրց. (1975): ԵԽ 1988–ին սահմանել է Ս–ի անվ. մրց., որը տրվում է մարդու իրավունքների և մտքի ազատության ոլորտում ակնառու հաջողությունների համար:

ՍԱԽԱՐՈՎ Անդրեյ Նիկոլաևիչ (ծ. 1930), ռուս. պատմաբան: ՌԳԱ թղթ. անդամ (1991): 1993–2010–ին՝ ՌԳԱ Ռուսաստանի պատմության ինստ–ի տնօրեն: Աշխ–ները վերաբերում են Հին Ռուսիայի արտաքին քաղ–յանը, գաղափարախոսությանն ու մշակույթին, XVII դ–ի Ռուս. պետության սոցիալ–տնտ. հարաբերություններին և Ռուսաստանի պատմության պատմագրությանը:

ՍԱԽԱՐՈՎ Բորիս Անդրեևիչ (1914–1973), ռուս. քիմիկոս և մետաղագործ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1970): Շախմատային կոմպոզիտոր, ԽՍՀՄ ս. վ. վ. (1968), շախմատ. կոմպոզիցիայի միջազգ. մրցավար (1956): Աշխ–ները վերաբերում են կիսահաղորդչ. նյութերին և բարձր մաքրության մետաղներին: Լենինյան (1964), ԽՍՀՄ Պետ. (1975, հետմահու) մրց–ներ:

ՍԱԽԱՐՈՎ Գավրիիլ Պետրովիչ (1873–1953), ռուս. ախտաբան–ֆիզիոլոգ: ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1936): Առաջարկել է անաֆիլաքսիայի ուսումնասիրման դաս. մոդել: Աշխ–ներ ունի ալերգաբանության, իմունաբանության, ներզատաբանության, փորձարար. ուռուցքաբանության և ժառանգ. ախտաբանության վերաբերյալ:

ՍԱԽԱՐՈՎ Իվան Պետրովիչ (1807–1863), ռուս բանահավաք, ազգագրագետ, հնագրագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1854): Հեղինակ է «Ռուսական ժողովրդական ընտանեկան ավանդազրույցներ» (մաս 1–3, 1836–37), «Ռուսական ժողովրդական երգեր» (մաս 1–3, 1838–39) ժող–ների, «Ռուսական սրբանկարչության ուսումնասիրություն» (գիրք 1–2, 1849) և այլ աշխ–ների:

ՍԱԽԱՐՈՎ Վլադիմիր Վլադիմիրովիչ (1902–1969), ռուս. գենետիկ, քիմ. մուտածնության վերաբերյալ ուսմունքի հիմնադիրներից: Ն. Կ. *Կոլցովի* աշակերտը: Աշխ–ներ ունի մարդու գենետիկայի (այդ թվում՝ խպիպի զարգացման ժառանգ. գործոնների, նաև քիմ. մուտածնության) խնդիրների վերաբերյալ, ուսումնասիրել է բույսերի պոլիպլոիդիայի երևույթը:

ՍԱԽԻՎԱՆ, (1865–1966–ին՝ Մոնտգոմերի), ք. Պակիստանի արլ–ում՝ Փենջաբ պրովինցիայում: Բն.՝ 251,6 հզ. (2010): Ս–ից արմ. Խարապպա ք–ինավայրն է:

ՍԱԿ, հարկի տեսակ միջնադար. Հայաստանում: Հայկ. մատենագրության մեջ գործածվել է «պայման», «որոշված չափ», «կարգ», «հաշիվ», նաև «տույժ», «հարկ» իմաստներով: Ըստ Հ. Մանանդյանի, Ն. Ադոնցի և ուր.՝ Ս. «տուրքի» իմաստով նշանակել է *գլխահարկ*:

ՍԱԿԱԳՆԵՐ, դրույքների համակարգ, որոնցով գանձվում են ծառայությունների վճարները: Առավել տարածված են տրանսպորտ., կապի, կոմունալ, մաքսային Ս.՝ պետ. սահմանով ապրանքների փոխադրման համար:

ՍԱԿԱԼԻ, ք. Ճապոնիայում՝ Հոնսյու կղզում: Բն.՝ 838,5 հզ. (2010): Նվինգստ՝ Ներքին Ճապոն. ծովի ափին: Հիշատակվում է մ. թ. 1–ին դ–ից:

ՍԱԿԱՎԱԽՈՋԱՆ ՈՐԴԵՐ, *օլիգոխետներ*, օղակավոր որդերի դաս: Երկ.՝ *մմ*–ի մասերից մինչև 2,5 *մ*: Հայտնի է մոտ 5 հզ. տեսակ: Ապրում են հողում (անձրևորդ) կամ քաղցրահամ ջրերում, հազվադեպ՝ ծովերում: Բարձրացնում են հողի բերրիությունը, նպաստում աղտոտված ջրամբարների ինքնամաքրմանը:

ՍԱԿԱՎԱՄԻՋՈՒԹՅՈՒՆ, *օլիգուրիա* (< *օլիգո*... և հուն.՝ uron – մեզ), օրվա ընթացքում արտադրվող *մեզի* քանակության պակասելը 500 *մլ*–ից (բնականոնը՝ 1500–500 *մլ*): Առաջանում է նեֆրոնի

պատիճում քամվող նախնական մեզի քանակի պակասման կամ հետներծծվող քանակի ավելացման դեպքերում՝ երիկամների հիվանդությունների, նաև օրգանիզմի ջրազրկման, ալդոստերոնի և հակամիզամուղ հորմոնի գերարտադրյան դեպքերում:

ՍԱԿԱՎԱՄՏՈՒԹՅՈՒՆ, *օլիգոֆրենիա*, բնածին կամ ձեռքբերովի հոգեկան արատ, որն արտահայտվում է մտավոր հետամնացությամբ՝ գլխուղեղի ախտաբանության պատճառով: Արտահայտվում է հիմնականում բանականության, զգացմունքների, կամքի, շարժունակության դրսևորումներում: Եզրույթն առաջարկել է գերմանացի հոգեբան Էմիլ Կրեպելինը (1856–1926):

ՍԱԿԱՎԱՐՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, *անեմիա*, հիվանդությունների խումբ, որոնք բնորոշվում են արյան մեջ էրիթրոցիտների և (կամ) հեմոգլոբինի քանակի նվազմամբ, որը հանգեցնում է թթվածնաքաղցի: Պատճառները՝ արյան կորուստը, արյան խորը քայքայումը, արյունաստեղծման ու վիտամին. խանգարումները, ոսկրածուծի տոքսիկ ախտահարումները, նաև որոշ ժառանգ. հիվանդություններ (մանգաղաձևաբջջ. Ս.): Դրսևորվում է ընդհ. թուլությամբ, գլխապտույտով, հևոցով, սրտխփոցով, մաշկածածկույթի գունատությամբ:

ՍԱԿԵՐ, *շակեր*, սկյութ. վաչկատուն և ռազմասեր ցեղեր: Բնակվել են Հս. Մերձսևծով. շրջաններում: Հայաստանում հաստատվել են բերրի տարածքներում. նրանց բնակության վայրն այնուհետև կոչվել է *Շակաշեն*: Մ. թ. ա. 680-ական թթ–ին հիմնադրել են *Աքանագյան թագավորությունը* (հայ պատմագիրներն այն համարում են հայկ.): Հայկ. լ–աշխարհում Ս. դարձել են նստակյաց և աստիճանաբար ձուլվել հայերին՝ ընդունելով նրանց սովորույթներն ու կենցաղը:

ՍԱԿԻ, ք. Ղրիմի Հանրապետությունում՝ *Սակի լճի* ափին: Ջերմուկացեխաբուժ. և կլիմ. առողջարան է: Բուժիչ միջոցները՝ լճի տղմացեխը, բնաղաջուրը և հանք. ջրերը:

ՍԱԿԻ ԼԻՃ, անհոսք աղի լիճ Ղրիմում՝ Եվպատորիայից 20 *կմ* հվ–արլ.: Մակերեսը՝ 97 *կմ*^{2}, միջին խոր.՝ 0,8 *մ*: Տարածվում է արլ.՝ բուժ. և արմ. արտադր. ավազանը: Ափին է Սակի առողջարանը:

ՍԱԿՈՎԻԼԱՐԻ Բորիս Վլադիմիրի (1920–1992), հույն կոմպոզիտոր: ՀՀ վաստ. արտիստ (1963): 1940–44–ին՝ Հայֆիլհարմոնիայի սիմֆ. նվագախմբի, 1944–66–ին՝ ԵՕԲԹ–ի նվագախմբի ջութակահար, ալտահար: Հեղինակ է սիմֆոնիաների, «Չոփչոփիկը» մանկ. բալետի, կվարտետների, սոնատների, 2 մանկ. ալբոմի, դաշնամուր. և այլ գործիք. մանրանվագների:

ՍԱԿՈՒԼԻՆԱ, բեղոտանի խեցգետնակերպների կարգի ծով. անողնաշար կենդանիներ: Մարմինը (տրամագիծը՝ մոտ 1,2 *սմ*) ունի արմատանման մակաճներ, որոնք թափանցում են ծովախեցգետնի մարմին (որի վրա Ս. մակաբուծում է):

ՍԱԿՈՎԻՉ Գենադի Վիկտորովիչ (ծ. 1931), ռուս. քիմիկոս: ՌԳԱ ակադ. (1992, թղթ. անդամ՝ 1981–ից): Սոց. աշխ. հերոս (1990): Աշխ–ները վերաբերում են ֆիզ. և տեխ. քիմիային:

Լենինյան (1984), ԽՍՀՄ (1970) և ՌԴ (1994) Պետ., ԽՍՀՄ ՆԽ (1990), Դեմիդովյան (2010) մրց–ներ:

ՍԱԿՈՒԱԲԵՐԴ, *Սագրաբերդ*, բերդ Այրարատ նահանգի *Ուրծ* գավ–ում: Ուրծեաց նախ–յան իշխանանիստ կենտրոնը: V դ–ում Ս–ի տերերից հիշատակվում են Ուրծեցի իշխաններ (Ներսեհ, Կողթեկ), XV դ–ում Ս. հիշվում է որպես գյուղ՝ եկեղեցով և մենաստանով: Ըստ Ղ. Ալիշանի և Ս. Երեմյանի՝ Ս. համապատասխանում է ներկայի Վեդի ք–ին:

ՍԱԿՍԱԳԱՆՄԿԻ (Տոբիլևիչ) Պանաս Կարպովիչ (1859–1940), ուկրաինացի դերասան, ռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1936): Ն. Կ. *Սադովսկու* և Ի. Կ. *Կարպենկո-Կարիի* եղբայրը: 1918–ին Կիևում հիմնադրել է ժող. թատրոն, որի հիման վրա 1922–ին ստեղծվել է Մ. Զանկովեցկայայի անվ. ուկր. դրամատիկ. թատրոնը (այժմ՝ Լվովում):

ՍԱՂ, *սակուր*, հնագույն զենք և գործիք, կացնի տարատեսակ: Ունեցել է ուղղանկյունաձև կոթառ և կիսաշրջանաձև շեղբ: Միջագետքում հայտնի է եղել մ. թ. ա. III հզ–ամյակում, Հայաստանի տարածքի բրոնզեդ Ս–երն իրենց տարատեսակներով պատկանում են մ. թ. ա. XIV–XIII դդ–ին: Ս–ով զինված զորատեսակը կոչվել է սակրավոր:

ՍԱԿՐԱՄԵՆՏՈ (Sacramento), գետ Կալիֆոռնիայում (ԱՄՆ): Երկ.՝ 640 *կմ* (Փիթ գետի հետ՝ 960 *կմ*), ավազանը՝ 73 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 314 *մ*^{3}/*վ*: Թափվում է Խաղաղ օվկ–ը: Նավարկելի է Սակրամենտո ք–ից: Կան խոշոր ջրամբար և ջրէկ:

ՍԱԿՐԱՄԵՆՏՈ, ք. ԱՄՆ–ի արմ–ում, Կալիֆոռնիա նահգ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 475 հզ. (2010): Առևտրատրանսպորտ. կենտրոն է: Զարգացած է հրթիռատիեզ. արդ–յունը: Հիմնադրվել է 1748–ին, երբ շահագործվել է ոսկու հանքավայրը, որն սկզբնավորել է «ոսկու տենդը»:

ՍԱԿՈՒԽԵՀԵՆՆԱ, գետ ԱՄՆ–ում: Երկ.՝ 990 *կմ*, ավազանը՝ 72,5 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1140 *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Ապալաչներից, թափվում Ատլանտ. օվկ–ի Չեսապիկ ծոցը:

ՍԱԿՈՒՐԵԹ, *Ասկուրեթ*, բերդավան Գուգարք նահգ–ում՝ Ախալցխա ք–ից հս–արլ.՝ Կուր գետի ափին: IX դ–ի վերջից հիշատակվում է որպես հայ *Բագրատունիների թագավորության* ռազմակայան: XII դ–ում ավերվել է երկրաշարժից: Հետագա դարերում Ս. վրացիներն անվանել են Ածղուրների, Ածղուր կամ Ազղուր: XVI–XVII դդ–ում տեղի բնակչությունը գերազանցապես հայեր էին: 1829–ին այստեղ հաստատվել են զզալի թվով կարնեցի հայեր: Ս. ներկայում Վրաստանի Ախալցխայի շրջանի Ածղուր գ–ն է:

ՍԱՀԱ, Մեհնադ (1893–1956), հնդիկ ֆիզիկոս–աստղաֆիզիկոս: Աշակել է բարձր ջերմաստիճաններում գազերի իոնացման (նաև աստղերի մթն–ում, Ս–ի **բանաձև**) տեսությունը: Ստացել է մետաղների մակերևութ. իոնացման հավասարում (**Լենգմյուր–Ս–ի հավասարում**): Աշխ–ներ ունի նաև թերմոդինամիկայի, վիճակագր. ֆիզիկայի, ճառագայթման տեսության, միջուկ. ֆիզիկայի վերաբերյալ:

ՍԱՀԱԿ, *Իսահակ* (ծ. թ. անհտ–547), հայազգի բյուզանդացի զորավար: *Արաբիտսի* և *Նարսեսի* եղբայրը: Հուստինոս I–ի օրոք (518–527) անցել է Բյուզանդիա: Եղբոր՝ Նարսեսի հետ մասնակցել է Պարսից արքա Խոսրով I–ի դեմ պատերազմին, աչքի ընկել Անգղի ճակատամարտում (543): Իտալիայում մասնակցել է (545–546) օստգոթերի դեմ պատերազմին: Գերեվարել են և մահապատժի ենթարկել:

ՍԱՀԱԿ Ա. ՊԱՐԹԵՎ, *Իսահակ Պարթև*, *Մեծն Սահակ* (348–439), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 387–ից: ՀԱԵ տոնելի սուրբ: Սասանյան արքունիքը Հայոց *Խոսրով Դ* թագավորին բանտարկել է Անհուշ բերդում, իսկ Ս. Ա. Պ–ի հայրապետությունը համարել անվավեր: *Վռամշապուհ* թագավորի աջակցությամբ վերահաստատվել է իր աթոռին: Ս. Ա. Պ–ի միջնորդությամբ Պարսից արքան վավերացրել է հայ նախ–յունների *գահնամակը*: Շուրջ քառորդդարյա խաղաղ պայմաններում իր տեղապահ *Մեսրոպ Մաշտոցի* համագործակցությամբ ու Վռամշապուհ թագավորի հովանավորությամբ ծավալել է մշակութ. գործունեություն: Հայոց գրերի ստեղծումից (405) հետո Ս. Ա. Պ–ի հրամանով արգելվել են օտար լեզուներով ուսուցումները: Նրա ջանքերով Հայոց թագավոր է ճանաչվել (422) Վռամշապուհի որդի *Արտաշես* Գ–ն: Ս. Ա. Պ. արգասավետ գործունեություն է ծավալել նաև Հայաստանի բյուզ. մասում: Պարսից Վռամ V արքան, քաղ. մեղադրանքներ հարուցելով Ս. Ա. Պ–ի և Արտաշես Գ–ի դեմ, նրանց հրավիրել է (428) Տիզբոն և ձերբակալել: Սակայն հայերի դժգոհությունը մեղմելու համար 432–ին Վռամ V աքսորից ազատել է Ս. Ա. Պ–ին: Ս. Ա. Պ. կարգավորել է հայկ. Տոնացույցը, գրել և եղանակավորել շարականներ, Պատարագամատույց, ծիս. աղոթքներ, վճռ. դեր է խաղացել հուն. Աստվածաշնչի թարգմյան և կանոնացման գործում:

ՍԱՀԱԿ Բ ԽԱՊԱՅԱՆ, *Գաբրիել Կարապետի Խապայան* (1849–1939), Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս՝ 1902–39–ին: 1874–81–ին՝ *«Միտն»* պարբ–ի խմբ.: ԱՀՊ–ից հետո 1919–ին վերադարձել է Ադանա, 1921–ին Կիլիկիայի հայության հետ բռնագաղթել է Սիրիա և, որպես հոգևոր առաջնորդ, սատարել Սիրիայում ու Լիբանանում ապաստանած հայությանը: 1930–ին հաստատվել է Անթիլիասում:

ՍԱՀԱԿ Բ ՈՒՂՂԵՑԻ (ծ. թ. անհտ–539), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 534–ից:

ՍԱՀԱԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ (ծ. թ. անհտ–մոտ 770), Հայոց իշխան, պատրիկ և սպարապետ՝ 753–ից: Հաջորդել է *Աշոտ Բագրատունի* Կուրացյալին: Նրա օրոք Աբբասյան խալիֆությունը սաստկացրել է հարկահանություններն ու կողոպտուտները: 768–ին մասնակցել է Պարտավի կանոնադիր ժողովին: Ս. Բ–ունն ձերբակալել ու սպանել են արաբները և բռնագրավել նրա տիրույթները:

ՍԱՀԱԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, *Սահակ Ասպետ Բագրատունի* (ծ. թ. անհտ–388), Սպերի *Բագրատունիների* տոհմի նահապետ իշխան՝ 370–380–ական թթ–ին: Հայոց *Արշակ Գ* արքան հալածել է՝ արքունի գանձեր յուրացնելու մեղադրանքով: Իր տոհմով անցել է Հայաստանի պարսկ. մասում գահակալած Խոսրով Դ–ի կողմը, կարգվել նրա զորաբանակի սպարապետ: Ս. Բ. Վանանդ գվռ–ի Երևակ դաշտում հաղթել է Արշակ Գ–ի զորաբանակին: Պարտված զորքը նահանջել է Հայաստանի հռոմ. մասը: Ս. Բ–ու՝ Հայաստանի վերամիավորման (Խոսրով Դ–ի գահի շուրջ) փորձերն ավարտվել են անհաջողությամբ:

ՍԱՀԱԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, *Սահակ Ասպետ Բագրատունի* (ծ. թ. անհտ–482), *Բագրատունիների* տոհմի նահապետ իշխան, Հայոց մարզպան և տանուտեր: Թոթափել է Սասանյանների տիրապետությունը,

կազմել կաո–յուն և հիմնվել Դվինի ք–ում: 482–ին Ներսեհապատի հաղթ. ճակատամարտում գլխավորել է այրուձին, զոհվել է նույն թվականին *Ճարմանայնի ճակատամարտում*: Մովսես Խորենացին հիացմունքով է խոսել Ս. Բ–ու մասին, նրա պատվերով է գրել «Պատմութիւն Հայոց» երկը:

ՍԱՀԱԿ Գ ՋՈՐԱՓՈՐԵՑԻ (ծ. թ. անհտ–703), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 677–ից: Բյուզանդիայի կայսր Հուստինիանոս II–ը, արշավելով Հայաստան, մոտ 693–ին Ս. Գ Ջ–ուն պատանդ է տարել Կ. Պոլիս՝ քաղկեդոնականություն պարտադրելու նպատակով: Կայսեր գահընկեցությունից (695) հետո վերադարձել է և շարունակել աթոռակալությունը: Նորոգել է կապն *Աղվանից եկեղեցու* հետ: Երբ ապստամբ հայ իշխանները ջարդել են (703) արաբ ոստիկան Աբդալլահի ջոկատը, Ս. Գ Ջ. մեկնել է Խառան՝ կանխելու Մուհամմադ իբն Օկբայի պատժիչ արշավանքը Հայաստան: Հեղինակ է ծիս. կանոնների և ճառերի. նաև հայ ամենահայտնի շարականագիրներից է, խաչին և եկեղեցուն նվիրված շարականների մեծագույն մասի հեղինակը:

ՍԱՀԱԿ ԾԱՂԿԱՐԱՐ, Իսահակ Ծաղկարար, Սահակ Տեր–Գրիգորյան (1780–1858), բնագետ, գրիչ, մանրանկարիչ, վրդ. (1812), եպս. (1832): 1815–ից զբաղվել է որդան կարմիրի ստացման և մշակման եղանակների վերականգնման, ներկատու միջատի հավաքի կազմակերպման (որի համար Ռուսաստանի ցարը նրան 1833–ին նշանակել է ցմահ թոշակ) հարցերով: Հեղինակ է «Խրատք ծաղկաբարութեան» (1815–40, ձեռ. № 9029), «Գաղափար օրինակք մանրանկարաց Սահակայ Ծաղկարարի» (1819–37, ձեռ. № 6248), «Բազմավէպ» (1843, ձեռ. № 6247) ձեռագրերի (բոլորը՝ Մտնդ.):

ՍԱՀԱԿ ՀԻԶԱՆԵՑԻ (ծ. թ. անհտ–1667), ճարտ.: Իր փեսա *Մուրադի* և քրոջ որդի Մովսես Հիզանեցու մասնակցությամբ 1654–58–ին կառուցել է Էջմիածնի Մայր տաճարի զանգակատունը: Ս. Հ. և Մուրադը 1664–ին հիմնադրել են Սուղնու Սբ Գևորգ վանքի եկեղեցին, որի շին–յան ընթացքում Ս. Հ. մահացել է:

ՍԱՀԱԿ ՊՈՆՏԱՑԻ (1695–մ. թ. անհտ), բժիշկ: *Մանուկ Պոնտացու* հայրը: Ուսումնասիրել է բժշկ. հին.հայկ. ձեռագրերը և որոշ նյութեր շարադրել իր աշխ–ներում (միայն 3–ն են հասել մեզ): Հայտնի են Ս. Պ–ու 1–ին «Բժշկական գիրքը» (1759), որն Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտի» վերամշակված տարբերակն է, և 2–րդ «Բժշկական գիրքը» (1763)՝ բժշկ. տերմինների արաբ–պարսկ–թուրք–հայ. բառարանով: Թարգմանել է որոշ նյութեր Սարկոս Ավրելիոսից:

ՍԱՀԱԿ ՍԵՎԱԴԱ, X դ–ի 1–ին կեսի իշխան՝ *Առանշահիկների* տոհմից: Ատրներսեհի թոռ Համամ Գրիգորի որդին: Գարդման և Զորագետ գավ–ները միացնելով ժառանգ. տիրույթ Փառիսոսին՝ ստեղծել է հզոր իշխանապետություն: Օժանդակել է փեսային՝ *Աշոտ Բ Երկաթին*՝ ամրապնդելու հայկ. միացյալ թագավորությունը: Երբ Աշոտ Բ–ի և Սյունիքի իշխանների հարաբերությունները սրվել են, Ս. Ս. անցել է վերջիններիս կողմը: Աշոտ Բ Երկաթը ճակատամարտում պարտության է մատնել Ս. Ս–ին և գերել նրան:

ՍԱՀԱԿԱՇՎԻԼԻ Միխեիլ Նիկոլոզի (ծ. 1967), Վրաստանի նախագահ՝ 2004–07 և 2008–12–ին: 2000–ին եղել է Վրաստանի ներկայացուցիչ ԵԽԽՎ–ում: 2000–01–ին՝ արդարադատության նախարար, 2002–03–ին՝ Սահմանադրական ժողովի նախագահ: Իշխանության է եկել այսպես կոչված Վարդերի հեղ–յամբ: Ս–ու օրոք փորձ է արվել ուժով մտնել Հվ. Օսիա (2008–ի օգոստ.), որին հետևել է Ռուսաստանի ուժային միջամտությունն ու Վրաստանից Աբխազիայի և Հվ. Օսիայի անջատումը: 2015–16–ին՝ Ուկրաինայի նախագահի խորհրդական, Օդեսայի մարզի պետ. վարչակարգի նախագահ (սահանգապետ): 2017–ի հունիսին զրկվել է Ուկրաինայի քաղաքացիությունից: Դեկտ. 8–ին անկարգություններ հրահրելու պատրվակով ձերբակալվել է, ընդդիմության ճնշմամբ՝ ազատ արձակվել:

ՍԱՀԱԿԴՈՒԽՏ, VIII դ–ի երաժիշտ–բանաստեղծուհի, Դվինի կաթողիկոսարանի ավագերեց Սահակի դուստրը, *Տրեխանտս Մոմնևցու* քույրը: Հորինել է հոգևոր երգեր՝ *կցուրդներ* և *մեղեդիներ*: Հայտնի է Ս–ի՝ Աստվածամորը ձոնված ակրոստիքոսը՝ գրված մեծացուսցե *շարականների* ոգով: Ս–ին է պատկանում նաև Վահան Գողթնացուն նվիրված շարականը, որը վերագրվել է վերջինիս քրոջը՝ *Խոսրովիդուխտին*:

ՍԱՀԱԿՅԱՆ Ալբերտ Վաղարշակի (1933–2008), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1981): Աշխ–ները վերաբերում են գղտ. փորձերի արդյունքների մաթ. մշակման, գղտ–յան մեջ ոչ գծային ծրագրավորման խնդիրներին:

ՍԱՀԱԿՅԱՆ Ալեքսանդր Հովհաննեսի (ծ. 1934), ճարտ–շինարար: Տեխ. գիտ. դ–ր (1984): ՀԽՍՀ վաստ. գյուտարար (1978): Համամիութ. նախագծատեխնոլոգ. ինստ–ի հիմնադիր–տնօրեն (1978–91): Եղբոր՝ Ռուբեն Ս–ի [ծ. 1937, տեխ. գիտ. թեկնածու (1971)] հետ մշակել է հարկերի ու ծածկերի բարձրացման եղանակով շինյան տեխնոլոգիա, ստեղծել դրա ճարտկառուցվածք. միասնական համակարգ: Շին–յան այդ «Սահակյանների եղանակը», լայնորեն կիրառվել է ԽՍՀՄ–ում:

ՀԽՍՀ (1974), ԽՍՀՄ (1984) Պետ. մրցներ, ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (բոլորը՝ եղբոր հետ):

ՍԱՀԱԿՅԱՆ Անուշավան Հայկի (1972), ազատ ոճի ըմբիշ: ԽՍՀՄ (1989), միջազգ. կարգի (1993) ս. վ.: ՀԽՍՀ կրկնակի (1994, 1995), Եվրոպայի (1994), պատանիների աշխարհի (1990) չեմպիոն:

ՍԱՀԱԿՅԱՆ Ավետիք, **Հայր Աբրահամ** (1865–1933), հաս–քաղ., պետ. գործիչ: 1909–ին ձերբակալվել է *«Դաշնակցության գործ»*–ով, 1912–ին ազատվել է բանտից: 1914–ին ընտրվել է Ազգ. բյուրոյի անդամ, ավելի ուշ՝ Ռուսաստանի սահմանադիր ժողովի, ապա՝ Անդրկովկասի Սեյմի անդամ, եղել է ինամատարության և պարենավորման նախարար, այնուհետև՝ ՀՀ խորհրդարանի 1–ին նախագահ: Խորհրդ. կարգեր հաստատվելուց հետո (1921–ին) տարագրվել է:

ՍԱՀԱԿՅԱՆ Արամայիս Ադամի (1936–2013), բանաստեղծ, երգիծաբան, խմբ., թարգմանիչ: 1982–2013–ին *«Ոզնի»* երգիծ. հանդեսի գլխ. խմբ.: Հեղինակ է «Աստղիկներ» (1958), «Ապրել և սիրել» (1968), «Բարև բարեկամ» (ռուս., 1971), «Երջանիկ եղեք» (1972), «Ես սիրում եմ ձեզ» (1975), «Բարի խոսք» (1980), «Ո՞ւր եք, տղաներ» (1984), «Զքնաղ երազ» (1991) բանաստեղծությունների, «Բարի ժպիտներ» (1988), «Խորհրդավոր խորհրդարան» (1992) երգիծ. ու հրապարակախոս. և այլ ժող–ների: Ղեկավարել է «Ծիծաղի տուն» հեռուստահաղորդաշարը: Հեղինակ է նաև 300–ից ավելի երգերի տեքստերի:

ՀԳՄ Ա. Իսահակյանի անվ. (1984), ՀԺՄ «Ոսկե գրիչ» (1986), ԹՄՄ ամենամյա (2009) մրց–ներ: ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» շքանշան (2011), ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2012): Երևանի պատվ. քաղաքացի (2006):

ՍԱՀԱԿՅԱՆ Արթուր Արտաշի (ծ. 1956), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1997): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006): Աշխ–ները վերաբերում են ֆունկցիաների տեսությանը, օրթոգոնալ շարքերին, Ֆուրիեի անալիզին, վեյվլետների, բազմաչափ բազմանդամ. միջարկման, մոտավորությունների տեսությանը: ՀՀ «Անանիա Շիրակացի» մեդալ (2014):

ՍԱՀԱԿՅԱՆ Արթուր Սուշեղի (ծ. 1952), վիրաբույժ–ուռուցքաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1995), պրոֆ. (1996): ՀՀ վաստ. բժիշկ (2014): Աշխ–ները վերաբերում են ՀՀ–ում կերակրափողի, ստամոքսի և ենթաստամոքս. գեղձի ուռուցքների վիրահատ. բուժման մեթոդների մշակմանը: Երևանի գլխ. վիրաբույժ (2006–ից):

ՍԱՀԱԿՅԱՆ Արծրունի Սամվելի (ծ. 1955), բանասեր, պատմաբան: Բանասիր. (2011) և պատմ. (2014) գիտ–ների դ–ր, պրոֆ. (2015): Հեղինակ է «Ժողովրդական քրիստոնեությունը միջնադարյան Հայաստանում» (2014), «Հայ հին վիպական ավանդույթը և երկրորդ դարի պատմագրությունը» (2015), «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» բնագրի պատմություն» (2015) մենագրությունների, «Հայ միջնադարյան մշակութային հեքիաթ, խաչքար» (2017) աշխ–յան:

ՍԱՀԱԿՅԱՆ Արտավազդ Բագրատի (ծ. 1953), վիրաբույժ: ՀՀ–ում պլաստիկ և միկրովիրաբուժության հիմնադիրներից: Բժշկ. գիտ. թեկնածու (1989): Աշխ–ները վերաբերում են վնասված վերջույթների մանրամասների վերականգնմանը, հրազեն. ծանր վնասվածքների բուժմանը: ՀՀ–ում առաջինն է կատարել անոթավորված հյուսվածքների, լաթերի, երիկամի (Ա. Միքայելյանի հետ) փոխպատվաստում, ոտնաթաթի մատի պատվաստում դաստակին, ՂԱՊ–ի ժամանակ (1990–92–ին) մասնակցել է վիրավորների տարհանման և բուժման աշխ–ներին: ՀՀ պլաստիկ վիրաբույժների ընկերակցության նախագահ (1998–2008):

ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1–ին աստիճանի (2011), ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ» (2011) շքանշաններ, ՀՀ «Մխիթար Հերացի» (1998), ԼՂՀ «Մարտական ծառայության համար» (2001), «Արիության», ԵՊԲՀ ոսկե (2004) մեդալներ, ՀՀ վարչապետի (2007), Ֆրիտյոֆ Նանսենն հիմնադրամի ոսկե (2003) հուշամեդալներ:

ՍԱՀԱԿՅԱՆ Բակո Սահակի (ծ. 1960), ԼՂՀ նախագահ՝ 2007–ից: Գեն–գնդ. (2007): 1999–2001–ին՝ ԼՂՀ ՆԳ նախարար, 2001–2007–ին՝ ԼՂՀ ԱԱԾ պետ: 1992–93–ին՝ ԼՂՀ ԻՊԿ–ի ղեկ–ի թիկունքի գծով տեղակալ, 1993–95–ին՝ թիկունքի գծով շտաբի պետ:

ԼՂՀ «Մարտական խաչ» 1–ին աստիճանի, «Սպարապետ Վազգեն Սարգսյան», ՌԴ «Պետրոս Մեծ» 1–ին աստիճանի, «Տիգրան Մեծ» շքանշաններ, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1–ին աստիճանի մեդալ:

ՍԱՀԱԿՅԱՆ Գարենց Հովհաննեսի (ծ. 1937), բուսաբան, մարգագետնաբան: Գաղտ. գիտ. դ–ր (1990): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (1994): Աշխ–ները վերաբերում են էրոզացված հողերի դասակարգման և հողապաշտպան միջոցառումների մշակման խնդիրներին:

ՍԱՀԱԿՅԱՆ Գրիշա Հարությունի (1947–2010), բեմանկարիչ: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2006): Պրոֆ. (2002): 1975–88–ին՝ Արտաշատի դրամատիկ. թատրոնի, ԵԵԿԹ, 1988–ից՝ ԵՊՀԹ գլխ. նկարիչ: Զնավորել է Մ. Ե. Սալտիկով–Շչեդրինի «Մի քաղաքի պատմություն» (1981, ԵՊՀԹ), Ֆ. Վերերի «Ընթրիք հիմարի հետ» (2003, ԵԵԿԹ), Ա. Տիգրանյանի «Անուշ» (2004, ԵՕԲԹ) և այլ բեմադրություններ: Հեղինակ է գեղանկարչ. և գրաֆիկ. գործերի:

Ռուս. դրամատուրգիայի փառատոնի 1–ին (1981, Երևան), ՀԹԳՄ «Արտավազդ» (2006, 2010) մրց–ներ:

ՍԱՀԱԿՅԱՆ Գուրգեն Սերոբի (1913–2000), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1963), պրոֆ. (1964): ՀՀ ԳԱԱ ակադ. (1982): ՀԽՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1970): Աշխ–ները վերաբերում են տարր. մասնիկների և տիեզ. ճառագայթների ֆիզիկային, այլասերված գերխիտ պլազմայի և գերխիտ աստղերի ֆիզիկային, ձգողության տեսությանը: Ներմուծել է նուկլոնների կառուցվածքի ֆորմֆակտորի գաղափարը: Ս–ի և Վիկտոր *Համբարձումյանի* աշխ–ներով 1960–ականների սկզբին ստեղծվել է աստղաֆիզիկայի նոր ուղղություն՝ գերխիտ աստղերի ֆիզիկա: Հայտնաբերել են հարաբերականության տեսության՝նոր՝ զանգվածի անոմալ պահպանողդի երևույթ: Ս. կանխատեսել է պտտվող նեյտրոն. աստղերի շուրջ խիտ պլազմայի օղակաձև մագնիսոլորտի գոյության հնարավորությունը:

Լենինի, ԽՍՀՄ Կարմիր աստղի, ՀՄՊ 2–րդ աստիճանի, Ժողդ–ների բարեկամության շքանշաններ: ՀԽՍՀ ԳԱ վաստակավոր գործիչ (1976):

ՍԱՀԱԿՅԱՆ Դավիթ Նազարի (1922–1991), մեքենագետ: Տեխ. գիտ. դ–ր (1967), պրոֆ. (1971): ԵՊԻ Վանաձորի մասնաճյուղի ռեկտոր (1978–87): Աշխ–ները վերաբերում են գաղտ. արտադր–յան մեքենայացման, աղակալած հողերի յուրացման, մեքենայացված աշխ–ների որակական հսկման հարցերին:

ՍԱՀԱԿՅԱՆ Երեմիա (1830–1883), բանաստեղծ: 1861–64–ին «Հյուսիսափայլ»–ում տպագրել է բանաստեղծություններ («Տեսիլք», «Արձագանք Մասիսի», «Տեսչության խորհուրդ խորն է, անքնին» ևն), որտեղ արծարծել է հայ ժողդ–ի ազգ–քաղ. ինքնորոշման գաղափարը:

ՍԱՀԱԿՅԱՆ Էդուարդ Սմբատի (ծ. 1933), մեքենագետ: Տեխ. գիտ. դ–ր, պրոֆ.: Աշխ–ները վերաբերում են թրթռացող բունկերների բեռնիչ սարքերի դինամիկայի հարցերին: Որդու՝ **Ռուբեն** Ս–ի հետ արտոնագրել է էլեկտրամեխ. փական (1997)՝ ծառայող. և բնակելի շենքերի համար:

ՍԱՀԱԿՅԱՆ Էմմա Ռուբենի (1953), սիլիկատ. նյութերի և շինանյութերի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1992), պրոֆ. (2003): ՀՃԱ անդամ: Աշխ–ները վերաբերում են տեղ. հումքով էներգա– և նյութախնայող. տեխնոլոգիաների մշակմանը՝ նոր ջերմամեկուսիչների, թեթև և գերթեթև լցանյութերի, թեթև բետոնների և հրակայուն նյութերի ստացման համար:

ՍԱՀԱԿՅԱՆ Թագուշ (Թագուհի) Գալուստի (1907–1977), դերասանուհի: Ադրբ. ԽՍՀ ժող. արտիստ (1960): 1926–49–ին՝ Բաքվի հայկ., 1949–ից՝ Ստեփանակերտի թատրոնների դերասանուհի (Նատո՝ Գ. Սունդուկյանի «Քանդած օջախ», Երանյակ՝ Հ. Պարոնյանի «Ատամնաբույժն արևելյան», Վաչիկ՝ Ա. Գուլակյանի «Արշալույսին», ևն):

ՍԱՀԱԿՅԱՆ Համբարձում Գուրգենի (ծ. 1935), նկարիչ: Վոլոդյա *Սահակյանի* եղբայրը: Գործերի հիմն. թեման ժամանակակից իրականությունն է («Բանֆակ», 1977, նատյուրմորտների շարք, 1990–2006, գրաֆիկ. շարք, 1995–ից, «Հրապուրիչ կինը», 1993–ից, շարք, ևն):

ՍԱՀԱԿՅԱՆ Մարատ Գուրգենի (1931–1999), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1997): Աշխ–ները հիմնականում վերաբերում են հայ ժողդ–ի մասնակցությանը ՀՄՊ–ին:

ՍԱՀԱԿՅԱՆ Յուրի Հակոբի (ծ. 1937), բանաստեղծ, մանկագիր, թարգմանիչ: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2012): Հեղինակ է «Արևը քո դեմքին» (1966), «Սարը սարին» (1986), «Զքնեք տղաներ» (2010), «Ծաղկած ծառեր ու գեղեցիկ կանայք» (2013) և բանաստեղծությունների այլ ժող–ների, «Աճպարար կատուն» (1977), «Զկնորս արջն ու մկնորս կատուն» (1987), «Բարի թզուկն ու պարկապզուկը» (1990), «Այբբենարանի ուղեկից» (1998), «Տուժած ճանճն ու բուժակ բուն» (2000), «Խաղիկներ–խաղալիքներ» (2002), «Շուտասելուկներ և բառախաղեր» (2004), «101 բանաստեղծություն մանուկներին» (2008), «Ասելուկներ Որսկան պապից» (2009) և մանկ. այլ գրքերի: Հեղինակ է նաև երգերի տեքստերի:

ՀԳՄ Ս. Զորյանի անվ. (1991), ՀՀ «Ոսկե եղեգն» գր. Պետ. (1999) մրց–ներ:

ՍԱՀԱԿՅԱՆ Նելլի Վարդանի (ծ. 1937), գրող, հրապարակախոս, թարգմանիչ, խմբ.: Գրում է ռուս.: 1994–2013–ին՝ «Էլիտարնայա գազետա» (ռուս.) թերթի խմբ.: Հեղինակ է «Խաղաղ բանաստեղծություններ» (1982), «Երկնային աստղ» (1986), «Հայկական լեռնաշխարհ» (1990, 2006), «Հայեր» (1990), «Իմ պատկերասրահը» (1997) բանաստեղծությունների, էսսեների, գր. դիմանկարների ժող–ների: Ռուս. է թարգմանել հայ բանաստեղծների գործերից:

ՍԱՀԱԿՅԱՆ Ռոմանոս Սարտիրոսի (1939–2015), բանաստեղծ, գրականագետ, խմբ.: Բանասիր. գիտ. թեկնածու (1977): Հեղինակ է «Գարնանային առասպել» (1974), «Արվեստ քերթության» (1992), «Տիեզերական համանվագ» (1997), «Երկրային ճամփորդ հավերժի ճամփին» (2001), «Արարչական սեր» (2010), «Սատիրիկոն» (2012) բանաստեղծությունների ու պոեմների ժող–ների, «Գեղագիտություն» (2008) աշխ–յան, «Անկրկնելի Պարույրը» (2014) հուշերի և այլ ժող–ների:

ՀԳՄ Ղ. Աղայանի անվ. մրց. (1992), Ֆրիտյոֆ Նանսեն հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2006), ՀԳՄ «Գրական վաստակի համար» (2009), ՀՀ ՄՆ ոսկե (2014) մեդալներ:

ՍԱՀԱԿՅԱՆ Ռուբեն Գարեգինի (1929–1998), պատմաբան, արևելագետ: Պատմ. գիտ. դ–ր (1986): 1975–81–ին՝ Ֆրանսիայում ԽՍՀՄ դեսպանության 1–ին քարտուղար: Աշխ–ները վերաբերում են նորագույն ժամանակաշրջանի Թուրքիայի ներքին ու արտաքին քաղ–յանը, Հայկ. հարցի պատմությանն ու պատմագրությանը, Հայոց ցեղասպանության մասին թուրք, անգլիացի, ֆրանսիացի հեղինակների աշխ–ների քննադատ. վերլուծությանը:

ՍԱՀԱԿՅԱՆ Ռուբեն Օնիկի (ծ. 1958), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (2014): Հիմն. աշխ–ներն են՝ «Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական մարտերը 1915 թվականին» (2005, համահեղ.), «Հայոց ոստիկանության պատմությունից» (մաս 1, 2, 2013, 2015, համահեղ.), «Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը. 1614 թ. հուլիս–1917 թ. փետրվար» (21015) ևն:

ՍԱՀԱԿՅԱՆ Ռուդիկ Վարդանի (1940–1986), կաթնագործության բնագավառի գիտնական: Գաղտ. գիտ. դ–ր (1983): Աշխ–ները վերաբերում են կաթի բաղադրության և տեխնոլոգ. հատկությունների հարցերին:

ՍԱՀԱԿՅԱՆ Սամվել Վարանցովի (ծ. 1951), ճարտարագետ, հիդրոտեխնիկ: Կենսբ. գիտ. դ–ր (1992), պրոֆ. (1993): Աշխ–ները վերաբերում են Արարատյան դաշտի աղուտ–ալկալի հողերի աղաջր. ռեժիմի կարգավորման, աղազերծման և ալկալիազերծման, հողբարելավման և այլ հարցերի: Առաջարկել է հողբարելավման նոր ուղղություն:

ՍԱՀԱԿՅԱՆ Սիմակ (Սենեքերիմ) Մկրտչի (1879–1961), պետ–կուս. գործիչ, մանկավարժ, խմբ.: 1944–61–ին՝ ՀԽՍՀ ԳԽ նախագահ: 1921–23–ին՝ «Կարմիր Լոռի», 1940–41–ին՝ «Սովետական մանկավարժ» (*«Մանկավարժ»*) պարբ–ների խմբ.: Հեղինակ է «Հասկեր» (1955) պատմվածքների, «Հոդվածներ, ելույթներ, հուշեր» (1983) հրապարակախոս. նյութերի ժող–ների: Կատարել է թարգմ–յուններ:

ՍԱՀԱԿՅԱՆ Սմբատ Սահակի (1895–1971), մեքենագետ: Տեխ. գիտ. դ–ր (1953), պրոֆ. (1954): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): Աշխ–ները վերաբերում են լեռն. և ջրովի երկրագործության մեքենայացման խնդիրներին:

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան:

ՍԱՀԱԿՅԱՆ Ստեփան Գևորգի (ծ. 1945), մեխանիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1997), պրոֆ. (1999): Աշխ–ները վերաբերում են դինամիկ առաձգականության տեսությանը, անհամասեռ առաձգ. միջավայրում ալիք. երևույթներին, էլեկտրամագնիս. և էլեկտրադինամիկ. երևույթներին:

ՍԱՀԱԿՅԱՆ Վաղարշակ Համբարձումի (1906–1978), երգիչ: ԽՍՀ ժող. արտիստ (1945): 1938–ից երգել է Սայաթ–Նովայի անվ. հայկ. գուսան. երգի անսամբլում (1942–ից՝ ղեկ.): Ճանաչվել է Պաղտասար Դպիրի, Նաղաշ Հովնաթանի, Շիրինի, Միսկին–Բուրջիի, Սայաթ–Նովայի, Քիվանու և ուր. երգերի յուրօրինակ կատարումներով:

ՍԱՀԱԿՅԱՆ Վլադիմիր Քրիստափորի (1926–1976), ԽՍՀՄ ՌԾՆ փոխնովակալ (1976): Եղել է ականազերծիչ նավի, էսկադրոնային ականակի հրամ., Սևծով. նավատորմի շտաբի պետ: 1974–ից աշխատել է ԽՍՀՄ ՌԾՆ ԳՇ–ում:

ՍԱՀԱԿՅԱՆ Վոլոդյա (Վլադիմիր) Գուրգենի (1932–2013), նկարիչ: Պրոֆ. (2004): Համբարձում *Սահակյանի* եղբայրը: Հեղինակ է կոմպոզիցիաների, նատյուրմորտների, դիմանկարների, գրաֆիկ. գործերի («Լճի մոտ», 1977, «Ռեքվիեմ», 1981, «Հայացք», 1999, «Արա Գեղեցիկ և

Շամիրամ», 2005, «Լիտվական ռապսոդիա», 1980, «Հին Երևան», 1982, վերջին երկուսը՝ նկարաշար, ևն):

ՍԱՀԱԿՅԱՆ Օնիկ Արզումանի (1890–1937), խորհրդ. ռազմ. գործիչ, 2-րդ կարգի բանակային կոմիսար: 1921-ին՝ Հս. Կովկասի ՀՕ քաղվարչության պետի տեղակալ, ապա՝ պետ. և ՌՀԽ անդամ, այնուհետև՝ Լենինգրադի ՀՕ-ի քաղվարչության պետ, Մոսկվայում՝ ԲԳԿԲ ռազմազինման վարչության պետի տեղակալ: Կարմիր դրոշի 2 շքանշան:

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆ, հիմնադրվել է 1927-ին Հալեպում՝ հնդկահայերի և բրազիլահայերի նյութ. օժանդակությամբ: 1932-ին տեղափոխվել է Նոր գյուղ: Ուսման տևողությունը՝ 6 տարի՝ մանկապարտեզի ու նախակրթարանի բաժիններով: Ուսուցումը՝ պետ. ծրագրով, հայ. դասավանդվում են հայոց լեզու և կրոն: 2017-ին միավորվել է Գալուստ Կյուլպենկյան վարժարանի հետ:

ՍԱՀԱԿՅԱՆ–ԼԵՎՈՆ ՄԿՐՏԻՉՅԱՆ ՔՈԼԵՋ, երկսեռ երկրորդ. վարժարան: Հիմնադրվել է 1923-ին Բեյրութում: Անվանվել է ի պատիվ ՄՏԿԿ կաթողիկոս Սահակ Բ Խապայանի: 1974-ին մեծահարուստ Լևոն Մկրտիչյանի միջոցներով կառուցվել է դպրոցի նոր շենք, վերանվանվել Ս–Լ. Մ. ք.: Ուսման տևողությունը՝ 12 տարի: Ունի մանկապարտեզ, գիշերօթիկ բաժին:

ՍԱՀԱԿՅԱՆ–ՆՈՒՆՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ, երկսեռ վարժարան: Հիմնադրվել է Կ. Պոլսի Սամաթիա թաղամասում 1831-ին: Ունի միջնակարգ և լիցեյի (քառամյա) բաժիններ, մանկապարտեզ, նախակրթարան:

ՍԱՀԱԿՅԱՆՑ Դավիթ Ռոբերտի (ծ. 1975), ռեժ., մուլտիպլիկատոր: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2016): Ռոբերտ և Լյուդմիլա *Սահակյանցների* որդին: 2010-ից՝ «Ռոբերտ Սահակյանց փրոդաքշն» անիմացիոն ստուդիայի հիմնադիր-ղեկ. («Հոթ-հոթդոգ», 2002, «Կանխագուշակում», 2003, «Երգող թվեր», 2008, «Միևերի խնդրանքը», 2011, «Անահիտ», 2014, մուլտիպլիկացիոն, «Աշխարհագրություն ամենափոքրերի համար», 2006, «Հին աշխարհի պատմություն: Բաբելոն», 2007, ուս. ֆիլմեր, ևն):

ՍԱՀԱԿՅԱՆՑ Զարեհ Հայկի (1933–1986), ջութակահար, ալտահար, դիրիժոր: Պրոֆ. (1983): ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1973): Հայաստանի կամեր. նվագախմբի հիմնադիր (1962) և գեղ. ղեկ. (1962–75), 1960–63-ին՝ Հայաստանի պետ. սիմֆ. նվագախմբի կոնցերտմայստեր: Այսրկովկաս. մրցույթի դափնեկիր (1960, Բաքու), ՀԼԿԵՄ մրց. (1970):

ՍԱՀԱԿՅԱՆՑ Լյուդմիլա Միխայիլի (ծ. 1950), ռեժ.: Ռոբերտ *Սահակյանցի* կինը, Դավիթ *Սահակյանցի* մայրը: Նկարահանել է «Մկների ժողովը» (1978), «Հազար ու մի հնարք» (1981), «Փոքրիկ հողագործը» (1983), «Երազահան» (1989) մուլտիպլիկացիոն, «Նախաշեմին» գեղ. ֆիլմերը: Կինեմատոգրաֆիստների միության (1979), Համամիութ. կփ (1989, Կիև) մրց-ներ:

ՍԱՀԱԿՅԱՆՑ Ռոբերտ Արշավիրի (1950–2009), կինոռեժ.: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1988), ժող. արտիստ (2008): Լյուդմիլա *Սահակյանցի* ամուսինը, Դավիթ *Սահակյանցի* հայրը: 1972-ից՝ Հայֆիլմի մուլտֆիլմերի միավորման ռեժ., 1987-ից՝ գեղ. ղեկ.: Մուլտֆիլմերին բնորոշ են սոցիալ-քաղ. ուղղվածությունը, զուսպ գույները, գրաֆիկ. պատկերները, երգիծանքը («Աղվեսագիրք», 1975, ըստ Վարդան Այգեկցու և Մխիթար Գոշի առակների, «Քաջ Նազար», 1980, «Խոսող ձուկը», 1983, «Մեղմակոճակ», 1989, «Տապան», 1996, «Ես էլ եմ հայ», 2000, ևն):

Համամիութ. կփ-երի (1976, Լվով, 1983, Չեռնովցի, Ուկրաինա, 1985, Կիև, 1989, Կիև), միջազգ. կփ (1991, Իսպանիա, Ֆրանսիա), ԹՄՄ «Արա և Մարալ» (2007) մրց-ներ:

ՍԱՀԱԿՈՎ Վալերի Իվանի (ծ. 1944), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր, պրոֆ., ՌԲՆԳԱ ակադ. (2000-ից): 1998-ից՝ «Ռոսսնաբ» ԲԸ տնօրենների խորհրդի նախագահ: Աշխ-ները վերաբերում են շին. համալիրի գործունեության արդյունավետության և շուկայի պայմաններում արտադրության կայունության ապահովման գնահատման խնդիրներին:

ՍԱՀԱՌՈՒՆԻ (Տեր-Հակոբյան) Երվանդ Մկրտչի (Իվանի, 1894–1967), կոմպոզիտոր: ՀԽՍՀ ժող. արտիստ (1964): Հս. Կովկասի առաջին ազգագր. արլ. անսամբլի (1930) հիմնադիրը: 1938-ից՝ ժող. երգի-պարի անսամբլի (Կիսլովոդսկ) ղեկ.: ՀԽՍՀ-ում հիմնադրել է պրոֆեսիոնալ և ինքնագործ խմբեր (Աշխ. ռեզերվների մշակույթի տան երգի-պարի անսամբլը, 1967-ից՝ Ս-ու անվ., ևն): Հեղինակ է վոկալ-գործիք. սյուիտների («Հայրենիք», «Բերքի տոն», «Գարնանային» ևն), երգերի («Շարմաղ աղջիկ», «Սայաթ-Նովա»), ժող. երգերի և պարեղանակների մշակումների:

ՍԱՀԱՌՈՒՆԻՆԵՐ, **Սահառունիք**, իշխան. (նախարար.) տոհմ Հին Հայաստանում: Ժառանգ. տիրույթն Արմ. Շիրակի և Երասխաձորի միջև ընկած տարածքն էր՝ *Մրևն* իշխանանիստ կենտրոնով: Աղբյուրներում հիշատակվում են IV դ-ից: Նշանավոր են *Բագ Սահառունին* (IV դ.), *Դավիթ Սահառունին* (VII դ.) և ուր.:

ՍԱՀԱՐԱ, Երկրագնդի ամենամեծ անապատն Աֆրիկայում: Տարածքը՝ 7 մլն *կմ*^{2} և ավելի: Ս-ի տարածքում են (լրիվ կամ մասնակիորեն) Մարոկկո, Թունիս, Ալժիր, Լիբիա, Եգիպտոս, Մավրիտանիա, Արմ. Սահարա, Մալի, Նիգերիա, Չադ, Սուդան պետությունները: Տարածքի 87 %-ը հարթավայր է, բարձր.՝ 200–500 *մ*: Հս-արլ-ում հոսք. իջվածքներ են (Քաթարա՝ –133, Էլ Ֆայում ևն), կենտր. մասում՝ Ահագդա, Տիբեստ (3415 *մ*, Էմի Կուսի լ.) լ-զանգվածները: Տարածքի 76 %-ը քար. (համադաններ, ռեգիներ, սիրիտներ) ու ավազ. (էրգեր և աղուտներ) անապատներ են, մնացած մասը՝ խճաքար. լեռներ: Կան նավթի, գազի, երկաթի, ֆոսֆորիտների հանքավայրեր: Կլիման՝ արևադարձ., անապատ.: Ս-ում, Նեղոսից բացի, մշտ. հոսք ունեցող գետեր չկան: Ստորգետնյա ջրերով սնվում են բազմաթիվ օազիսներ, որտեղ մշակում են ձիթենի, ֆյունիկյան արմավենի, թզենի, պտղատու ծառեր, ցիտրուսներ ևն: Զբաղվում են քոչվոր. և կիսաքոչվոր. անասնապահությամբ: Տես նաև *Արևմտյան Սահարա*:

ՍԱՀԱՐԱՆՊՈՒՐ, ք. Հնդկաստանում՝ Ուտտար Պրադեշ նահ-ում՝ Գանգես գետի ափին: Բն.՝ 528 հզ. (2010): Գղտ. շրջանի կենտրոն է:

ՍԱՀԻՆՅԱՆ Ալեքսանդր Արամի (1910–1982), ճարտ.: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1961): Անահիտ *Սահինյանի* եղբայրը: Ս-ի նախագծերով Երևանում կառուցվել են Սանիտարամանրէաբան. ինստ-ի շենքը (1938), Կրկեսի դահլիճը (1939–40, Ս. Ասատրյանի հետ) և այլ կառույցներ, կազմել է Գառնիի տաճարի վերակազմության նախագիծը (1967–68), ղեկավարել վերականգնման աշխ-ները (1969–75, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1975): Հեղինակ է «Քաղաղի բազիլիկայի ճարտարապետությունը» (1955), «Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը» (1983), «Գառնի և Գեղարդ» (1958), «Ակնարկներ հին և միջնադարյան ճարտարապետության պատմության» (համահեղ., ռուս., 1978) և այլ գրքերի: ՀԽՍՀ ԳԱ Թ. Թորամանյանի անվ. մրց. (1984, հետմահու):

ՍԱՀԻՆՅԱՆ Անահիտ Արամի (1917–2010), արձակագիր, հրապարակախոս, խմբ.: Ալեքսանդր *Սահինյանի* քույրը: 1969–79-ին՝ *«Պիոներ»*, 1969–77-ին, միաժամանակ՝ *«Ծիծեռնակ»* մանկ. ամսագրերի գլխ. խմբ.: Հեղինակ է «Խաչուղիներ» (1946), «Ծարավ» (1955), «Կարոտ» (1974), «Նունուֆար» (1994) վեպերի, «Կեռմաններ» (1976) վիպակների, «Ուշացած ժամադրություն» (1965), «Սեփական ոտնահետքերով» (1984), «Դիմանկարներ: Իրապատում» (2003) պատմվածքների, վիպակների և ակնարկների, «Զայն բարբառո հանապատի» (գիրք 1–2, 2005) հրապարակախոս. նյութերի ժող-ների, «Ինքնադիմանկարի փորձ» (2006) երկի, «Հեյ, ճամփաներ, ճամփաներ» (1986) ուղեգրության: ՀԽՍՀ Պետ. մրց. (1981):

ՍԱՀԼ ՍՄԲԱՏՅԱՆ, **Սահղ Սմբատյան** (ծ. թ. անհտ–855-ից հետո), Արցախի հս. գվո-ների իշխան (IX դ-ի 1-ին կես)՝ *Առանշահիկների* տոհմից: *Եսայի Արու Մուսեի* հետ գլխավորել է ազատագր. պայքարն արաբ. գերիշխանության դեմ: 837-ին ձերբակալել և արաբ. զորավար ալ-Աֆշինին է հանձնել Խումարյան շարժման առաջնորդ Բաբանին (Բաբեկ), որը պարբերաբար կողոպտել է Արցախի և Սյունիքի գվո-ները: Հակաարաբ. ընդվզումների համար 854-ին ձերբակալվել է և այլ հայ իշխանների հետ տարվել տաժանակրության:

ՍԱՀՄԱԴԻՆ, **Ավետենց Սահմադին**, XIII դ-ի հայ մեծահարուստ Անիում: Ծավալել է շին. գործունեություն, նորոգել և կառուցել է եկեղեցիներ, հյուրանոցներ, պալատներ: Արճեշի, Երևանի, Օշականի և այլ եկեղեցիների արձանագրություններում Ս. հիշատակվում է որպես բարեգործ:

ՍԱՀՄԱՆ (մաթ.), հաստատուն թիվ, որին անսահմանորեն մոտենում է փոփոխ. մեծությունը՝ իր փոփոխման ընթացքում: Պարզագույն $a_1, a_2, \dots a_n$ իրական թվերի Ս. այն a թիվն է, որից հաջորդականության a_n անդամն այնքան քիչ է տարբերվում, որքան մեծ է n-ը, նշանակվում է

$$\lim_{n\to\infty} a_n = a;$$

Օր.՝ $\frac{1}{2}, \frac{2}{3} \dots \frac{n}{n+1}$ հաջորդականության Ս. = 1, այսինքն՝ $\lim_{n\to\infty} \frac{n}{n+1} = 1$:

Ոչ բոլոր հաջորդականություններն ունեն Ս.: Ս-ի տեսությունն ընկած է մաթ. անալիզի հիմքում:

ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎ, սահմանադրության ընդունման համար գումարվող խորհրդարան, որն ընտրվում է մինչև 6 ամիս ժամկետով: Առաջին Ս. ժ. հրավիրվել է Ֆրանսիայում 1789-ին, որը նույն տարում կոչվել է *Ազգային ժողով*: Ընտրվում է համընդհ., հավասար և ուղղակի, փակ գաղտնի քվեարկությամբ: Ս.

ժ–ի լիազորություններն սահմանվում են համապատասխան օրենքով:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ, հատուկ դատ. մարմին մի շարք երկրներում, որն իրականացնում է սահմանադր. արդարադատությունը: Որոշ երկրներում (օր.՝ ԱՄՆ–ում) Ս. դ–ի գործառույթներն իրականացնում է պետության գերագույն դատարանը: ՀՀ Ս. դ. ստեղծվել է 1996–ին: Ունի 9 անդամ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, *միապետության* տարատեսակ, որի պայմաններում պետության ղեկ–ի՝ միապետի լիազորությունները սահմանվում են սահմանադրությամբ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՍՌԿ), **Հայ սահմանադրական ռամկավար կուսակցություն**: Հիմնադրվել է 1908–ի հոկտ. 31–ին Ալեքսանդրիայում՝ *Վերակազմյալ հնչակյանների*, *Արմենական* կուս–յունների և այլ կազմ–յունների նախկին անդամների նախաձեռնությամբ: Համագործակցել է *Հայ ժողովրդական կուսակցության* հետ: Հրատարակել է *«Վան–Տոպ»*, 1919–20–ին Երևանում՝ «Հայաստանի ձայն» թերթերը: 1921–ի հոկտ. 1–ին ՍՌԿ, այլ կուս–յունների հետ միավորվելով, հիմք է դրել *Ռամկավար ազատական կուսակցությանը*:

ՍԱՀՄԱՆԱՊՐՈՒԹՅՈՒՆ, պետության հիմն. օրենքը, սահմանում է պետության հիմն. (օրենսդիր, գործադիր, դատ.) մարմինների ստեղծման եղանակը, նրանց փոխհարաբերությունները, լիազորությունների շրջանակը, անհատի իրավունքներն ու պարտականությունները, իշխանության մարմինների կազմավորման, գործունեության կարգը, ընտր. համակարգի սկզբունքները, պետության գործունեության մեջ քաղաքացիների մասնակցության կարգը:

Հայ իրականության մեջ Ս–յան 1–ին նախագիծը *«Որոգայթ փառաց»*–ն է: ՀՀ–ում Ս. ընդունվել է 1996–ին, բարեփոխվել՝ 2006 և 2016–ին: Հունիսի 5–ը ՀՀ Ս–յան օրն է: Տես նաև *Ազգային սահմանադրություն* (1860):

ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄ, **սահմանագծում**, 1. պետ. սահմանագծի անցկացումը տեղում՝ սահմանագծման փաստաթղթերի հիման վրա, իրականացվում է սահմանանշաններ (սահման. այուն, բուրգ, փշալար. ցանցեր ևն) տեղադրելով: 2. (Բժշկ.) մեռուկացման գոտին սահմանազատող հատիկավոր հյուսվածքի գիծը:

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳԾԵՐ, պաշտպ. ամրությունների համակարգ, որոնք կառուցվել են պետությունների սահմաններին՝ Հին Եգիպտոսում, Հին Հռոմում, Հին Չինաստանում (ամրաշին. յուրահատուկ կառույց է Չին. պատը): Արմ. Եվրոպայի երկրներում կառուցվել են մինչև XVII դ., Ռուսաստանում՝ մինչև XIX դ., Հայաստանում՝ հին և միջին դարերում (ամրոցներ, բերդեր, ամրաշին. նշանակություն ունեին նաև առանձին եկեղեցիներ ու վանքեր): XX դ–ում որոշ պետությունների (Ֆրանսիա, Գերմանիա, Ֆինլանդիա) Ս. ա. գ. կոչվել են ամրացված գոտիների համակարգ (օր.՝ *«Զիգֆրիդի գիծը»* ևն): Ս. ա. գ. կառուցվել են նաև հայ–ադրբ. շփման գծում ՂԱՊ–ից հետո:

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԳԵՏԵՐ, գետեր, որոնցով անցնում է պետ. սահմանը: Ըստ Միջազգ. իրավունքի՝ պետության իրավունքը Ս. գ–ի նկատմամբ տարածվում է մինչև գետով անցնող պետ. սահմանագիծը, այսինքն՝ պետության տարածքը հաշվվում է մինչև այդ գիծը: Ս. գ. տնտ. նպատակներով օգտագործելու իրավունք ունեն միայն սահմանակից պետությունները՝ մինչև սահմանագիծ: ՀՀ–ում Ս. գ. է Արաքսը:

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹԵՈՐԵՄՆԵՐ հավանականության տեսության, հավանականությունների տեսության մի շարք թեորեմների անվանումը, որոնք ցույց են տալիս մեծ թվով պատահական գործոնների ազդեցության դեպքում այս կամ այն օրինաչափության առաջացման պայմանները: Պարզագույն Ս. թ–ից են *Բեռնուլիի թեորեմը*, *Լապլասի թեորեմը*: Տես նաև *Մեծ թվերի օրենք*:

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱ (ՍԹԿ), 1. **չափորոշիչ**, օդում, ջրում, հողում, սննդամթերքում վնասակար նյութի այն քանակը, որի հետ մշտ. կամ որոշակի ժամանակահատվածում շփումը բացասաբար չի ազդում մարդու առողջության վրա: 2. **Էկոլոգիական չափորոշիչ**, աղտոտող քիմ. նյութի առկ–ն կոնցենտրացիան շրջակա միջավայրում, որի երկարատև ազդեցությունը բացասաբար չի ազդում մարդու առողջության ու սերունդների վրա: ՍԹԿ–ի նորմատիվները միասնական են բազմաթիվ երկրներում, նաև ՀՀ ամբողջ տարածքում, որոնց որոշման եղանակները հաստատվում և գործողության մեջ են դրվում ՀՀ Կառ–յան սահմանված կարգով:

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՉԱՓՔԱՆԱԿ (ՍԹՉ) **իոնացնող ճառագայթման**, հիգիենիկ նորմ, որով սահմանվում է մարդու ամբողջ մարմնում կամ նրա առանձին օրգաններում առկն թույլատրելի չափաքանակը, որն իոնացնող աղբյուրների հետ աշխ–ի ընթացքում չի առաջացնում առողջ. վիճակի անցանկալի փոփոխություններ:

ՍԹՉ կախված է ամբողջ մարմնի այս կամ այն խմբի, այսպես կոչված, կրիտիկ. օրգանների ճառագայթահարումից և կազմում է տարեկան 50–300 *մՋվ*:

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԿԵՏ բազմության, a կետը E բազմության Ս. կ. է, եթե նրա ցանկացած e շրջակայքում կա տվյալ բազմությանը պատկանող a–ից տարբեր առնվազն 1 կետ:

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՇԵՐՏ, հոսող հեղուկի (գազի) բարակ շերտ պինդ մարմնի պատի մակերևույթին, որի պատին հպված եզրում արագությունը 0 է, իսկ հեղուկի հետ շփման սահմանում հավասար է հոսքի արագությանը: Նույնն է նաև շրջահոսվող մարմինների դեպքում:

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, քաղտնտ–յան ուղղություն. առաջացել է 1870–ական թթ–ին: Սկսել են ավստր. դպրոցի ներկայացուցիչները՝ Ու. Ջևոնսը, Լ. Վալրասը, Կ. Մենգերը, Է. Բյոմ–Բավերկը և ուր.: Համաձայն Ս. օ. տ–յան՝ ապրանքների արժեքավորությունը որոշվում է դրանց «սահմանային օգտակարությամբ»՝ ելնելով պահանջմունքների սուբյեկտիվ գնահատումից: Սուբյեկտի պահանջմունքների աստիճան. հագեցվածությանը զուգահեռ՝ իրի օգտակարությունը նվազում է: Ս. օ. տ. փորձում է պատասխանել, թե ինչպես լավագույնս բաշխել միջոցները՝ սահմանափակ պաշարներով պահանջմունքները բավարարելու համար:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ՍՊԸ), մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկ., որի կանոնադր. կապիտալը բաժանված է բաժնեմասերի: ՍՊԸ–ի մասնակիցները պատասխանատու չեն նրա պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են ընկ–յան գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

ՍԱՀՄԱՆԱՔԱՐԵՐ, հողաբաժանումները նշող հատուկ քարեր Հին Հայաստանում: Դրվել են գյուղերի (գյուղ. համայնքների հողեր) ու ագարակների (մասնատիր. հողեր) սահմանագլուխներին՝ *Արտաշես Ա.* արքայի ձեռնարկած հող. բարենորոգումների կապակցությամբ:

ՍԱՀՄԱՆՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ, պետության տարածքը հարևան պետությունների տարածքներից անջատող գիծ: Պետությունների միջև սահմաններն անձեռնմխելի են: Դրանց խախտումը համարվում է ոտնձգություն պետության ինքնիշխանության դեմ:

ՍԱՀՄԱՆՈՒՄ, **դիֆինիցիա**, անծանոթ եզրույթի (բառի) իմաստի բացահայտումը ծանոթ եզրույթների (բառերի) և արդեն իմաստավորված (անվանական Ս.) կամ տեքստում ծանոթ բառերի օգտագործման միջոցով (համատեքստ. Ս.):

«ՍԱՀՄԱՆՔ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ» («Փիլիսոփայության սահմանումներ»), **«Գիրք սահմանաց»**, *Դավիթ Անհաղթի* գլխ. փիլ. երկը (VI դ–ի 1–ին կես), հին շրջանի հայ փիլ. մտքի հուշարձան: Նպաստել է աշխարհիկ ուղղության ձևավորմանը և անտիկ փիլ–յան ավանդների տարածմանը միջնադար. Հայաստանում: Ընդգրկում է հեղինակի հայացքների ողջ համակարգը, նրա գոյաբան., հոգեբ., բարոյագիտ. ուսմունքները: Հեղինակը պաշտպանում է աշխարհի ճանաչելիության սկզբունքը և հիմնավորում փիլ–յան՝ որպես գիտ–յան, իրավունքները, տալիս է այդ գիտ–յան սահմանները՝ ելնելով Արիստոտելի, Պլատոնի և Պյութագորասի ուսմունքներից, քննադատում է *ագնոստիցիզմը* և *սկեպտիցիզմը*: «Ս. ի.» ազդել է բյուզ. և արաբ. փիլ–ների հայացքների վրա: Առաջին անգամ հրատարակվել է 1731–ին (Կ. Պոլիս), աշխարհաբար՝ 1980–ին (Երևան), թարգմանվել է տարբեր լեզուներով:

ՍԱՀՄԻ, հայկ. հեթանոս. տոմարի 3–րդ ամիսը: Ս–ի 1–ը համապատասխանում է հոկտ. 10–ին:

ՍԱՀՅԱՆ Համո (Գրիգորյան Հմայակ Սահակի, 1914–1993), բանաստեղծ: 1965–67–ին՝ «Գրական թերթի» խմբ.: Հեղինակ է «Ծիածանը տափաստանում» (1953), «Բարձունքի վրա» (1955), «Նահիրյան դալար բարդի» (1958), «Քարափների երգը» (1968), «Տարիներս» (1970), «Սեզամ բացվիր» (1972), «Կանչե, կռունկ» (1973), «Իրիկնահաց» (1977), «Ժայռից մասուր է կաթում» (1979), «Կանաչ–կարմիր աշուն» (1980), «Տոհմի կանչը» (1981), «Դաղձի ծաղիկ» (1986), «Ինձ բացակա չդնեք» (հրտ.՝ 1998), «Քարե պատարագ» (հրտ.՝ 1999), «Արցունքով լվացված սերեր» (հրտ.՝ 2007), «Ձեռագիր մասունքներ» (հրտ.՝ 2012) սիրային, հայրենասիր. բանաստեղծությունների, «Քառյակներ» (հրտ.՝ 2005) և այլ ժող–ների: Ս–ի պոեզիան առանձնանում է բնության գովերգումով, մարդկային դրամատիկ ապրումների նուրբ բացահայտումով: ՀԽՍՀ Պետ. մրց. (1975):

ՍԱՀՆԱԿԱՅԻՆ ՍՊՈՐՏ, արագընթաց վայրէջք 1–2-տեղանոց մրցարշավ. սահնակներով՝ հատուկ արհեստ. (սառցե) կամ բնական ուղեգծերով՝ 15–20 թեք շրջադարձերով: Առաջացել է XIX դ-ի վերջին Շվեյցարիայում, ԽՍՀՄ-ում՝ 1960-ական թթ-ին: 1957-ին հիմնադրվել է Ս. ս-ի միջազգ. ֆեդերացիան, որը 2010-ին միավորում էր 53 երկիր: Եվրոպայի առաջնություններն անցկացվում են 1914-ից, աշխարհինը՝ 1955-ից, օլիմպ. խաղերի ծրագրում է 1964-ից: 2016-ին աշխարհի առաջնությունների ցանկ է ներառվել սահնակային սպրինտը:

ՍԱՀՆՕՁԵՐ (Coluber), *լորտունների* ընտանիքի սողունների սեռ: Մարմնի երկ.՝ մինչև 2,4 մ: Արագաշարժ են, լավ մագլցում են ծառեր: Որսին խեղդում են գետնին սեղմելով: Խայթոցը ցավոտ է, բայց մարդու համար՝ անվտանգ: Հայտնի է մոտ 30 տեսակ, ՀՀ-ում՝ 3, լայնորեն տարածված են խայտաբղետ և դեղնավիզ կամ կարմրավիզ Ս.: Վերջինը Եվրոպայի ամենամեծ օձն է, որի ժող. անունը շահմար է (պարսկ. – արքայաօձ):

ՍԱՀՐԱՏՅԱՆ Արիստակես Թադևոսի (1905– մ. թ. անհտ), ճարտարագետ-գնդ.: ՀԽՍՀ վաստ. ճարտարագետ (1974): Աշխ-ները վերաբերում են Անդրկովկասի երկաթուղիների նախագծման ու շին-յան պատմությանը:

ՍԱՀՔ (նյութերի դիմադրություն), նյութի ձևափոխությունները՝ նրա վրա կիրառված ուժերի ազդեցությամբ, երբ տեղի է ունենում նյութի զուգահեռ շերտերի տեղաշարժ՝ նրանց միջև հեռ-յան անփոփոխ պահպանության պայմաններում: Ս-ի հաշվարկը հեղույսներով և գամերով միացությունների, եռակցման կարերի ամրության հիմքն է:

ՍԱՂԱԹԵԼՅԱՆ Արմեն Կառլենի (ծ. 1953), ճարտարագետ-երկրաբան: Երկրբ-հնքբ. գիտ. դ-ր (2000), պրոֆ.: ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի հիմնադիր տնօրեն (1993-ից): Աշխ-ները վերաբերում են օգտակար հանածոների հանքավայրերի որոնման երկրաքիմ. մեթոդներին, շրջակա միջավայրի պահպանության հիմնահարցերին են: Էկոլոգիայի ու կենսագործնեության անվտանգության գիտ-յունների միջազգ. և ՌԲՆԳԱ անդամ:

ՀՀ «Անանիա Շիրակացի» մեդալ (2013):

ՍԱՂԱԹԵԼՅԱՆ Էմմա Աշոտի (ծ. 1929), երկրաբան: Երկրբ-հնքբ. գիտ. դ-ր (1974), պրոֆ. (1977): Աշխ-ները վերաբերում են ՀՀ հանքավայրերի առաջացման օրինաչափություններին, հանքաբանությանը, տարածքների ճառագայթման հարցերին:

ՍԱՂԱԹԵԼՅԱՆ Լևոն Մկրտչի (1884–1968), դրամատուրգ: Հեղինակ է «Մի կտոր հող հանար» (բեմ.՝ 1923, հրտ.՝ 1924), «Երկու կյանք» (բեմ.՝ 1932), «Կարմիր մանյակ» (բեմ.՝ 1947) պիեսների, նաև «Եղնիկի արահետով» կինոսցենարի, «Արևի շողերով» մանկ. օպերետի լիբրետոյի:

ՍԱՂԱԹԵԼՅԱՆ Հրաչյա Մարկոսի (1904–1979), ուռուցքաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1954), պրոֆ. (1957): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ: Աշխ-ները վերաբերում են կենդ. և բուս. հյուսվածքների վրա ռենտգեն. ճառագայթների կենսբ. ազդեցությանը, ստամոքսաղիք. համակարգի հիվանդությունների ռենտգենաբան. և ստամոքսաղիթ. ախտորոշմանը: Բացահայտել է չարորակ ուռուցքների ռենտգենաբուժման ժամանակ ճառագայթների կոտորակ. քանակների արդյունավետ ազդեցությունը: Ռենտգենաբանների և ուռուցքաբանների հայկ. գիտ. ընկ-յան փոխնախագահ:

ՍԱՂԱԹԵԼՅԱՆ Վահան Վահրամի (ծ. 1952), արձակագիր, խմբ.: 2003–06-ին՝ «Զավախք» հայրենակց. միության ***«Սայնջակ»*** պաշտոնաթերթի խմբ.: Հեղինակ է «Տոհմի կանաչ ծառը» (1988), «Արնախաչ» (1994), «Ու կյանքը ձգվում է մահվան միջով» (2004), «Կարմիր մայրամուտ» (2004), «Տասներկու պատմվածք» (2010), «Ճաքած հայելի» (2014) պատմվածքների ժող-ների, «Ջիվանի» (2016) պատմվածաշար-վեպի:

ՀԳՄ Դ. Դեմիրճյանի (2004), Մկրտիչ Սարգսյանի (2011) անվ. մրց-ներ, Մ՚Ն «Գրիգոր Նարեկացի» մեդալ (2014):

ՍԱՂԱԹԵԼՅԱՆ Վաչագան Վարդանի (1912–1999), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. թեկնածու (1970): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1970): Աշխ-ները վերաբերում են Հայաստանում մաթ. կրթության պատմությանը, հայ մաթ. եզրույթաբանության հարցերին: Կազմել և թարգմանել է մաթ-ի բուհ. դասագրքեր: ԽՍՀՄ Կարմիր աստղի, «Պատվո նշան» շքանշաններ:

ՍԱՂԱՎԱՐՏ, 1. պաշտպ. սպառազինության տեսակ. գլխարկ, որ պաշտպանել է սառը զենքից: Պատրաստել են փայտից, ծառերի կեղևներից, մորթուց, ապա՝ մետաղից: Հնագույն Ս-ները հայտնաբերվել են Ուրի թագավոր. դամբարանից (մ. թ. ա. III հզ-ամյակ): Հայկ. լ-աշխարհում առաջին Ս-ները վերագրվում են մ. թ. ա. II հզ-ամյակին (Լճաշենի բրոնզեդար. դամբարաններ): Ուրարտ. շրջանի արվ-ի գործեր են Արգիշտի Ա-ի, Սարդուրի Բ-ի Ս-ները, որոնք զարդարված են քանդակապատկերներով: Ս-ով են պատկերված նաև հայ մի շարք զորավարներ: Կանոնավոր բանակներում Ս. պահպանվել է մինչև XIX դ.: Մետաղե Ս-ները պաշտպանել են փամփուշտից ու արկի բեկորներից: 2. Հատուկ գլխարկներ, որոնք պաշտպանում են հարվածից, աղմուկից, ջերմաստիճանի տատանումներից: Առանձին տեսակներ հանդերձվում են կապի միջոցներով: 3. Եկեղեց. ասեղնագործ-մարգարտազարդ գլխանոց, գազաթին՝ փոքր խաչ: Խորհրդանշում է Հիսուս փրկչի փշե պսակն ու վարշամակը: Պատարագի ժամանակ ՀԱԵ-ում Ս. կրում են քին-ներն ու վրդ-ները: 4. **Մեծ Ս.** (սպորտ), թղթախաղում օգտագործվող հասկացություն, որը 1930-ական թթ-ին դարձել է մեծ թենիսի առաջնության պայման. անվանումը: Ներկայում անցկացվում են Մեծ Ս-ի՝ Ավստրալիայի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի բաց առաջնությունները, Ուիմբլդոնի մրցաշարը: «Մեծ Սաղավարտի» տիտղոսի արժանանում է այն թենիսիստը (թենիսիստուհին), որը 1 օրացուց. տարում հաղթում է նշված բոլոր մրցաշարերում, «Ոսկե մեծ սաղավարտի»՝ եթե շահում է նաև օլիմպ. ոսկե մեդալը:

ՍԱՂԱՎԱՐՏՈՒԿ (Scutellaria), **պնակախոտ, խուլեղինջազգիների** (շրթնածաղկավորներ) ընտանիքի բազմամյա խոտաբույսերի կամ թփերի ցեղ: Հայտնի է 300 տեսակ, ՀՀ-ում՝ 3 (արլ., ամենաարձր և սովոր.)՝ Արարատի, Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում: Շատ տեսակներ գեղազարդիչ են, մի քանիսը՝ դեղաբույսեր:

ՍԱՂԱՐԹ, **պսակ**, ծառի վերգետնյա ճյուղավորված մասը, բնական պայմաններում տարբեր ծառատեսակներ ունեն տարբեր ձևերի Ս-ներ: Պտղատու ծառերի Ս-ները ձևավորում են տեղի բնակլիմ. առանձնահատկություններին համապատասխան (տես նաև *Էփ*):

ՍԱՂԱՐԹԱՎՈՐ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐ, ծառեր և թփեր՝ սովորաբար թիթեղավոր և կոթունավոր տերևներով, որոնց վրա վառ արտահայտված են ճյուղավորված ջղավորումները: Կոշտասաղարթավորներից են կաղնին, հաճարենին, բոխին, հացենին, թխկին, սաքսաուլը, փափկասաղարթավորներից՝ լաստենին, լորենին, բարդին ևն: Օգտագործվում են փայտ ստանալու, դաշտապաշտպան անտառաբուծության, կանաչապատման և այլ նպատակներով: Որոշ Ս. ծ-ի պտուղներն ուտելի են (օր.՝ ընկուզենու, շագանակենու, խնձորենու, տանձենու, արոսենու):

ՍԱՂԻՆՅԱՆ (Սագինով) Վարդան Մկրտչի (1908–1992), ճարտարագիտատեխ. ծառայության գնդ-մայոր (1961): Տեխ. գիտ. թեկնածու (1946): Եղել է ՀՕՊ-ի Կիևի բարձրագույն ճարտարագիտ. ռադիոտեխ. ուսումնարանի աերոդինամիկայի ամբիոնի պետ, 1956–62-ին՝ ուսումնարանի պետի տեղակալ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949):

ՍԱՂՄ, 1. մարդու և կենդանիների էմբրիոն. օրգանիզմը՝ անհատ. զարգացման (օնտոգենեզ) վաղ շրջանում: Զարգանում է սովորաբար բեղմնավորված ձվաբջջից (զիգոտ), սնվում նրա մեջ պաշարված սննդանյութերով կամ մայրական օրգանիզմի հաշվին: Պարփակված է ձվա- և սաղմնաթաղանթներում: 2. Պտերանմանների և սերմնավոր բույսերի սերմնաբողբոջ (սերմնասկզբնակ). սովորաբար առաջանում է սաղմն. պարկում՝ բեղմնավորված ձվաբջջից:

ՍԱՂՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, էմբրիոլոգիա, գիտ-յուն օրգանիզմների նախասաղմն. զարգացման (սեռ. բջիջների գոյացման), բեղմնավորման, սաղմն. կամ թրթուր. զարգացման մասին: Առանձնացնում են մարդու, կենդանիների և բույսերի Ս.: Տարբերում են ընդհ., համեմատ., փորձարար. և էկոլոգ. Ս.: Ս-յան հիմնադիրներն են Հիպոկրատը, Արիստոտելը, նոր ժամանակներում էվոլյուցիոն Ս-յան հիմքերը դրել են Կ. Ֆ. Վոլֆը, Կ. Մ. Բերը, Ա. Օ. Կովալևսկին, Ի. Ի. Մեչնիկովը: ՀՀ-ում Ս-յամբ զբաղվում են Մոլ. կենսբյան ինստ-ի բջջաբանության և Ս-յան լաբորատորիայում:

ՍԱՂՄՆԱԹԱՂԱՆԹՆԵՐ, մարդու, որոշ անողնաշարների, շնաձկների, բոլոր բարձրակարգ ողնաշարավորների սաղմը շրջապատող թաղանթներ: Ապահովում են սաղմի կենսագործունեությունը և պաշտպանում նրան մնասվածքներից: Հիմն. տիպերն են ամնիոնը, խորիոնը և ալանտոիսը:

ՍԱՂՄՆԱՅԻՆ ՊԱՐԿ, **իգական գամետոֆիտ**, ծածկասերմ բույսերի սերմնաբողբոջի կենտր. մասը, որտեղ զարգանում է ձվաբջիջը, և տեղի է ունենում կրկնակի բեղմնավորում, այնուհետև զարգանում են սաղմն ու էնդոսպերմը:

ՍԱՂՄՆԱՅԻՆ ՊԼԱՋՄԱ, **իդիոպլազմա**, հասկացություն, որն առաջարկել է Ե. Վայսմանը (1892)՝ նշելու համար վարկած. նյութը՝ ժառանգության կրողը, որն ամփոփված է սեռ. բջիջներում և փոխանցվում է սերնդից սերունդ: Ս. պ-ի մասին հայեցակարգը, որը ժխտում է ձեռքբերովի հատկությունների ու հատ-

կանիշների ժառանգումը, կանխատեսել է ժառանգականության ժամանակակից քրոմոսոմ. տեսության մի շարք դրույթներ:

ՍԱՂՄՈՆԱԿԵՐՊՆԵՐ, ոսկրային ձկների կարգ: Երկ՝ 2,5 *սմ*–1,5 *մ*: Ծով. (այդ թվում՝ խորջրյա) գաղթող և քաղցրահամ ջրերի ձկներ են: Հայտնի է 27 ընտանիք, այդ թվում՝ սաղմոնաձկներ, ձամբռիկներ, գայլաձկներ, սաղմոնիկներ ևն: Տարածված են օվկ–ներում և քաղցրահամ ջրերում: Մի շարք Ս. կարևոր արդյունագործ., բազմացման և կլիմայավարժեցման ձկներ են:

ՍԱՂՄՈՆԻԿ (Mallotus villosus), **մոյվա**, սաղմոնիկների ընտանիքի ծով. ձուկ: Երկ՝ մինչև 22 *սմ*, կ. զ՝ մինչև 17 *գ*: Տարածված են Ատլանտ. և Խաղաղ օվկ–ներում: Արդյունագործ. ձուկ է:

ՍԱՂՄՈՆԻԿՆԵՐ (Osmeridae), **կորյուշկաներ**, սաղմոնակերպների կարգի ձկների ընտանիք: Երկ՝ մինչև 35 *սմ*, կ. զ՝ 350 *գ*: Հայտնի է 10 տեսակ՝ Հս. կիսագնդի ծովերում և քաղցրահամ ջրերում, այդ թվում՝ Հս. սառուցյալ օվկ–ի ծովերում: Եվրոպ. Ս–ի քաղցրահամ ջրերի տեսակը մանիշաձուկն է: Արդյունագործ., բազմացման և կլիմայավարժեցման ձուկ է:

ՍԱՂՄՈՆՆԵՐ, սաղմոնաձկներ (Salmonidae), սաղմոնակերպների կարգի ձկների ընտանիք: Երկ՝ 50 *սմ*–1,5 *մ*: Հս. կիսագնդի քաղցրահամ ջրերի գաղթող ձկներ են: Հայտնի է 7 սեռ՝ Հս. սառուցյալ օվկ–ի ավազանում, Ատլանտ. և Խաղաղ օվկ–ների հս. մասերում, Սև, Կասպից և Արալյան ծովերում: Ս–ի շարքին են դասվում բազմաթիվ արժեքավոր արդյունագործ. ձկներ: 1 տեսակ և 1 ենթատեսակ պահպանվում են:

ՍԱՂՄՈՍ, քնար. բանաստեղծություն, հոգևոր երգ: Հայկ. եկեղեցում ժամասացությունների ժամանակ երգել են IV դ–ից: Ս–ները կատարվել են «հավանաբար ժողովրդական հին եղանակներով» (Կոմիտաս), հիմն. կերպը եղել և պահպանվում է վանկաչափականը, սովորաբար՝ երգ. կրկնակներով: XIX դ–ի վերջին նոր հայկ. նոտաներով վերաձայնագրված ավանդ. այդ եղանակները հիմնված են ութձայնի վրա և ազգ. եկեղեց. երաժշտության էական մասն են:

ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔ, ճարտ. համալիր ՀՀ Արագածոտնի մարզում՝ Քասաղ գետի ափին՝ Սաղմոսավանք գ–ի արլ–ում: Գլխ.՝ Սբ Սիոն եկեղեցին կառուցել է իշխան Վաչե Վաչուտյանը 1215–ին: Ներքուստ խաչաձև է՝ 4 կրկնահարկ ավանդատներով, արտաքուստ՝ ուղղանկյուն՝ գլանաձև թմբուկով, կոնաձև վեղարով գմբեթով: 1215–35–ին իշխանը եկեղեցուն կից կառուցել է նաև գավիթ, որի ծածկի համակարգը եզակի օրինակներից է հայ ճարտ–յան մեջ: 1255–ին կառուցվել է գրատունը (ծածկը՝ խաչվող կամարներ): 1998–2001–ին Ս. վերանորոգվել է, 2001–ին՝ վերաօծվել:

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, **Սաղմոսաց գիրք**, Հին կտակարանի ամենատարածված գրքերից: Սաղմոսներն Իսրայելում ի սկզբանե սահմանված էին երաժշտության ուղեկցությամբ երգվելու համար: Ս. սաղմոսների ժող. է, ընդգրկում է 151 սաղմոս: Ժող–ի գլխ. հեղինակը և կազմողը Դավիթն է (կոչվում է «Գիրք սաղմոսաց Դաւթի»): Հայոց ծիսարանը և մասնավորապես ժամագիրքը հիմնականում կազմված են սաղմոսներից: Սաղմոսները մեկնել են Ընդհանր. եկեղեցու գրեթե բոլոր նշանավոր հայրերը՝ ***Աթանաս Աղեքսանդրացին, Եփրեմ Ասորին, Բարսեղ Կեսարացին, Հովհան Ոսկեբերանը*** և ուր., հայ իրականության մեջ՝ ***Ներսես Լամբրոնացին, Վարդան Արևելցին, Գրիգոր Տաթևացին*** և ուր.: ***Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցին*** 1687–ին, ի մի հավաքելով սաղմոսների հայ. մեկնությունները, հրատարակել է բնագրի հետ՝ «Պարզաբանութիւն Սաղմոսացն Դաւթի»: Սաղմոսների ամենաճավալուն մեկնության հեղինակը Միքայել ***Չամչյանն*** է («Մեկնութիւն սաղմոսաց», հ. 1–10, 1815–23): Մտնդ–ում պահվում են 150 ձեռագիր Ս–ներ, որոնցից ինագույնն ընդօրինակվել է 1298–ին (ձեռ. № 6473): Ս. առաջին անգամ տպագրել է ***Աբգար Թոխաթեցին*** 1565–66–ին Վենետիկում:

ՍԱՂՅԱՆ Աշոտ Սերոբի (ծ. 1957), քիմիկոս–օրգանիկ: Քիմ. գիտ. դ–ր (1997), պրոֆ. (2003): ՀՀ ԳԱԱ ակադ. (2010, թղթ. անդամ՝ 2006–ից): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2013): ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳՀ կենտրոնի տնօրեն (1979–ից), ԵՊՀ ֆարմացիայի ինստ–ի տնօրեն (2017–ից): Մշակել է ֆերմենտ. լուծույթներից կենսաբանորեն ակտիվ միացությունների անջատման ու մաքրման տեխնոլոգիաներ և օպտիկապես ակտիվ սպիտակուց. ու ոչ սպիտակուց. D–ամինաթթուների քիմիամանրէաբան. եղանակներ: Սինթեզել է 80–ից ավելի ոչ սպիտակուց. ամինաթթուներ, որոնք ներառված են հայտնի ֆիրմաների («Ակրոս»՝ ԱՄՆ, «Կալբիոքեմ»՝ Շվեյցարիա, ևն) քարտացանկերում:

ԵՄ Դեկարտի անվ. (2001), ՀՀ նախագահի (2004, 2011), ՀՀ Պետ. (2015) մրցներ, ՉԺՀ Կառ–յան «Բարեկամություն» շքանշան (2002):

ՍԱՂՅԱՆ Բորիս Ջինավորի (ծ. 1941), ըմբիշ, մանկավարժ: Մանկավարժ. գիտ. դ–ր (1991), պրոֆ. (2002): ԽՍՀՄ ս. վ. (1962): ՀՀ ֆիզ. կուլտուրայի վաստ. աշխատող (2001): Աշխ–ները վերաբերում են ՀՀ ազգաբնակչության ֆիզ. զարգացման հիմնահարցերին, տարբեր քաշային կարգերի ըմբիշների ֆիզ. պատրաստության խմբային առանձնահատկություններին:

ՍԱՂՅԱՆ Գրիգոր Միքայելի (1880–1937), ֆթիզիատր: Բժշկ. գիտ. դ–ր (1904): Նինա ***Սաղյանի*** հայրը: Հայաստանում հակատուբերկուլոզ. ծառայության կազմակերպիչը: 1918–ից եղել է Հայաստանում որբանոց. գործերի գլխ. լիազոր և գաղթականների ու որբերի տեղավորման հանձնաժողովի նախագահ: 1921–ին Դիլիջանում հիմնել է առաջին մանկ. հակատուբերկուլոզ. առողջարանը, 1926–ին՝ հակատուբերկուլոզ. դիսպանսերը, այնուհետև՝ 2–րդ հակատուբերկուլոզ. հիվանդանոցը (1965–ից՝ Ս–ի անվ.), 1927–ին՝ Երևանի քաղաք. հակատուբերկուլոզ. դիսպանսերը, 1931–ին՝ «Նորք» մանկ. առողջարանը, 1936–ին՝ Երևանի հակատուբերկուլոզ. ԳՀԻ (գործել է մինչև 1940–ը): Աշխ–ները վերաբերում են Դիլիջանում թոքերի, ոսկրահոդ. տուբերկուլոզի բուժմանը: Անհիմն բռնադատվել է, գնդակահարվել, հետմահու՝ արդարացվել (1955):

ՍԱՂՅԱՆ Սուշեղ Միքայելի (1900–1970), բեմանկարիչ, ռեժ.: Ադրբ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1940): Տարբեր տարիների եղել է Բաքվի հայկ. թատրոնի նկարիչ և գլխ. ռեժ., 1941–ից՝ ռուս. թատրոնի նկարիչ (Ե. Չարենցի «Կապկազ թամաշա», Գ. Սունդուկյանի «Պեպո», Մ. Պ. Պոգոդինի «Տեմպ», ևն): 1928–ին Բաքվում հիմնադրել է Հայ երաժշտ. թատրոն:

ՍԱՂՅԱՆ Նինա Գրիգորի (1906–1993), դաշնակահարուհի, մանկավարժ: Պրոֆ. (1981): ՀՀ արվ. վաստ. գործիչ (1967): Գրիգոր ***Սաղյանի*** դուստրը: Նվագակցել է Հայկանուշ Դանիելյանին, Տաթևիկ Սազանդարյանին, Շարա Տալյանին, Պավել Լիսիցյանին և ուր.:

ՍԱՃ, **հնդկակաղնի**, աղավնիճազգիների ընտանիքի ծառ: Տարածված է Հվ–արլ. Ասիայի անտառներում: Մշակում են թանկարժեք փայտանյութի համար, որն օգտագործում են նավաշինության ու վագոնաշինության նպի համար:

ՍԱՄԱՆՅԱՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, պետություն Միջին Ասիայում՝ 875–999–ին: Մայրաքաղաքը՝ Բուխարա: Առաջացել է Արաբ. խալիֆության տրոհման հետևանքով և X դ–ի 1–ին կեսին միավորել է Միջին Ասիայի զգալի մասը: Մինչև X դ–ի վերջն ունեցել է տնտ. և մշակութ. վերելք:

ՍԱՄԱՐ (Samar), լեռն. կղզի Ֆիլիպինների կղզեխմբի կենտր. մասում: Տարածքը՝ 13,4 հզ. *կմ*^{2}, բարձր.՝ մինչև 896 *մ*: Կա պղնձի հանքավայր: Մշակում են կոկոս. արմավենի: Գլխ. ք.՝ Կատբալոգան:

ՍԱՄԱՐԱ, 1. գետ Ուկրաինայում, Դնեպրի ձախ վտակը (թափվում է Դնեպրովսկի ջրամբարը): Երկ՝ 320 *կմ*, ավազանը՝ 22,6 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը (ակունքի մոտ)՝ 10,4 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է Նովոմոսկովսկ ք–ից:

2. Գետ ՌԴ Անդրվոլգայում, Վոլգայի ձախ վտակը: Երկ՝ 594 *կմ*, ավազանը՝ 64,5 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 46,3 *մ*^{3}/*վ*: Վոլգայի հետ միախառնման տեղում է Սամարա ք.:

ՍԱՄԱՐԱ (1935–91–ին՝ Կույբիշև), ք. ՌԴ–ում, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1134,7 հզ. (2009): Նվիճգատ՝ Վոլգայի ափին՝ Սամարա գետի միախառնման վայրում:

ՍԱՄԱՐԱՅԻ ՄԱՐԶ, վտմ ՌԴ Մերձվոլգ. դաշն. օկրուգի կազմում: Վարչ. կենտրոնը՝ ***Սամարա***: Տարածքը՝ 53,6 հզ. *կմ*^{2}, բն.՝ 3,3 մլն (2016): Ազգ. կազմը՝ ռուսներ (85 %), թաթարներ (4,1 %), չուվաշներ (2,7 %), մորդվաններ (2,1 %), ուկրաինացիներ (1,4 %), հայեր (0,7 %) ևն: Վարչականորեն բաժանվում է քաղաք. 10 մարզի և տեղական ինքնակառավարման 27 շրջանի: Կազմավորվել է 1928–ին (1936–91–ը կոչվել է Կույբիշևի մարզ): Կան նավթի, գազի, այրվող թերթաքարերի, ծծումբի և այլ հանքավայրեր: Զարգացած են մեքենաշինությունը, մետաղամշակությունը, ավտոմոբիլ. արդ–յան և այլ ճյուղեր:

ՍԱՄԱՐԱՆՉ (Samaranch) Խուան Անտոնիո (1920–2010), իսպանացի քաղ. գործիչ: ՄՕԿ–ի 7–րդ նախագահը (1980–2001): ՄՕԿ–ի ցմահ պատվո նախագահ: Ճանաչվել է XX դ–ի օլիմպ. շարժման ամենաճանաչված գործիչը:

ՍԱՄԱՐԻՆ, (երբ.՝ Շոմրոն), հնագույն ք. Պաղեստինում, ***Իսրայելի թագավորության*** մայրաքաղաքը: Հիմնադրվել է մ. թ. ա. մոտ 880–ին:

ՍԱՄԱՐԻՈՒՄ (Samarium), Sm, տարրերի պարբեր. համակարգի III խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 62, ա. զ՝ 150,36, լանթանիդ է: Սպիտակ, արծաթափայլ մետաղ է, խտ՝ 7,536 *գ/սմ*^{3}, $t_{հալ.}$՝ 1072°C: Հայտնաբերվել է սամարսկիտ միներալում (այստեղից՝ Ս. անվանումը): Կորալտի հետ մագնիս. համաձուլվածքների և գլոցվածքի (ժապա–

վենի) ձևով՝ ցերեկ. լույսի լամպերի մեկնասարքերի էլեկտրոդների բաղադրիչ է:

ՍԱՄԱՐՂԱՆԴ, ք. Ուզբեկստանում, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 352 հզ. (2010): Երկթեղ. հանգույց է: Ունի օդանավակայան, 3 բուհ, թանգարաններ: Հայտնի է մ. թ. ա. 329–ից՝ Մարականդ անունով: XIV–XV դդ–ի վերջին Թիմուրայինների մայրաքաղաքն էր, 1924–30–ին՝ Ուզբ. ԽՍՀ մայրաքաղաքը: Գեղ. արհեստագործության հնագույն կենտրոն է: Հայտնի են Շահի Զինդա դամբարանների, Բիբի–Խանըմ պաշտամունք. համալիրները, Ռեգիստան հրապարակի համալիրը, Գուր–Էմիր, Ակսարայ, Ռուհաբադ դամբարանները ևն: Հին Ս. Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է: Հայերը Ս. եկել են Արմ. Հայաստանում թուրք. կոտորածներից հետո, Լեռն. Ղարաբաղից և այլ վայրերից, 1905–ին կառուցվել, 1995–ին վերաօծվել է Ս–ի Սբ Աստվածածին եկեղեցին:

ՍԱՄԱՐՍԿԻ Ալեքսանդր Անդրեևիչ (1919–2008), ռուս. մաթեմատիկոս: ՌԳԱ ակադ. (1976): Սոց. աշխ. հերոս (1979): Աշխ–ները վերաբերում են մաթ. ֆիզիկային և հաշվող. մաթ–ին: ԽՍՀՄ (1954), ՌԴ (1999) Պետ., Լենինյան (1962) մրց–ներ:

ՍԱՄԲՈ (իսպ.՝ zambo), հնդկացիների և սևամորթների կամ մուլատների ամուսնությունից ծնված սերունդների անվանումը Լատ. Ամերիկայում:

ՍԱՄԲՈ [ռուս.՝ сам(озащита) б(ез) о(ружия)], մարզ. ըմբշամարտի տեսակ, որի հիմքում դրված են տարբեր ազգ. ըմբշամարտերի առավել արդյունավետ ձևերը: Ձևավորվել է ԽՍՀՄ–ում 1930–ական թթ–ին: Միջազգ. սիրող. ֆեդերացիան միավորում է 40 երկիր (2010): Եվրոպայի առաջնությունն անցկացվում է 1972–ից, աշխարհինը՝ 1973–ից: Ունի նաև մարտ. բաժին՝ ինքնապաշտպ–յուն հակառակորդի գինված կամ անզեն հարձակումից: ՀՀ–ում Ս. զարգացել է 1950–ական թթ–ից. հայ մարզիկներից աշխարհի չեմպիոն են դարձել Գառնիկ Հովհաննիսյանը (1981), Գագիկ Ղազարյանը (1988–91), Գուրգեն Թութխալյանը (1988–91), աշխարհի և Եվրոպայի՝ Երվանդ Գրիգորյանը (1996–2001), Վաչիկ Վարդանյանը (2010, 2011), Աշոտ Դանիելյանը (2010, 2013), Եվրոպայի չեմպիոն և աշխարհի առաջնությունների մրցանակակիր՝ Վահան Խոջոյանը (1992–2000), Միքայել Հայրապետյանը (1992–2001), Գոհար Թովմասյանը (1992–99), Իրինա Բաղդասարյանը (1992–99) և ուր.:

ՍԱՄԵՀԱՆ, X դ–ի ճարտ.: Կառուցել է Հայկաձոր գ–ի (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզում) Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (980–985):

ՍԱՄԹԱՎԻՍ, խաչագմբեթ եկեղեցի (1030, ճարտ.՝ Իլարիոն Սամթավելի), վրաց. միջնադար. ճարտ. հուշարձան Գորի ք–ից 30 *կմ* հեռ–յամբ:

ՍԱՄԻԹ (Anethum), **տորախ**, նեխուրազգիների ընտանիքի միամյա, հազվադեպ՝ երկամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 8 տեսակ, ՀՀ–ում՝ 1 (բուրավետ Ս.): Աշակվում է բոլոր մարզերում: Համեմունք. բույս է, յուրահատուկ բույրն ու համը պայմանավորված են Ս–ում պարունակվող եթերայուղերով: Օգտագործում են թարմ և չորացրած՝ աղցանների ու կերակուրների, կիսահասուն ծաղկացողունները՝ թթուների մեջ, նաև հրուշակեղենի, պահածոների արտադր–յան մեջ: Պտուղների եփուկն ու թուրմը բժշկության մեջ կիրառում են որպես ախորժարեր և հանգստացնող միջոց:

ՍԱՄՆԵՐ (Sumner) Զեյմս Բետչելեր (1887–1955), ամերիկացի կենսաքիմիկոս: Ապացուցել է ֆերմենտների սպիտակուց. բնույթը: Առաջինն է անջատել (1926) ուրեազ ֆերմենտը՝ բյուրեղների ձևով: Նոբելյան մրց. (1946):

ՍԱՄՆԵՐ Ուիլյամ Գրեմ (1840–1910), ամերիկացի սոցիոլոգ, տնտեսագետ և հրապարակախոս, սոցիալ. դարվինիզմի ներկայացուցիչներից: «Ազգային ավանդույթներ» երկում օգտագործել է «էթնոցենտրիզմ» և այլ հասկացություններ, վերլուծել է սոցիալ. կյանքի նորմերն ու ավանդույթները:

ՍԱՄՇՎԻԼԴԵ, **Շամշուլդե, Օրբելթ**, բերդ *Գուգարք* նհնգ–ի Տաշիր գվո–ում՝ Խրամ գետի ձախ ափին (այժմ՝ Վրաստանի Թեթրիծղարոյի շրջանի Սամշվիլդե գ–ից հվ): Սմբատ Ա–ի (890–914) ժամանակից *Բագրատունիների* թագավորության կարևոր ռազմակայաններից էր հս–ում: Եղել է *Կյուրիկյան թագավորության* 1–ին մայրաքաղաք–ամրոցը. մինչև 1065–ը *Դավիթ Անհողինի* գահանիստն էր:

Ս. բերդը բաղկացած է միջնաբերդից, դղյակից և պարիսպներից դուրս կառուցված բնակելի մասից: Միջնաբերդում Սբ Սիոն քառամույթ գմբեթավոր բազիլիկն է (778), Կյուրիկյանների պալատ. եկեղեցին (X դ.), որը 2 զույգ քարե կլոր սյուներով եռանավ բազիլիկ է: Պարիսպներից դուրս X–XI դդ–ի միանավ Սբ Գևորգ եկեղեցին է (նորոգվել է 1672–ին):

ՍԱՄՈԱ (Samoa), **Ծովագնացների կղզիներ**, 14 հրաբխ. կղզիների խումբ Խաղաղ օվկ–ում: Տարածքը՝ մոտ 3 հզ. *կմ*^{2}: Բաժանված է Սամոա պետության և Ամերիկ. Սամոայի (ԱՄՆ տիրույթ) միջև:

ՍԱՄՈԱ (Samoa), **Սամոայի Անկախ Հանրապետություն** (Independent State of Samoa), պետություն Խաղաղ օվկ–ի հվ–արմ–ում: Տարածքը՝ 2,8 հզ. *կմ*^{2}, բն.՝ 192 հզ. (2009): Մայրաքաղաքը՝ *Ապիա*: Պետ. լեզուները՝ սամոաերեն և անգլ.: Կառավարման ձևը՝ միապետ.: Պետության գլուխը սամոացիների առաջնորդն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը (Օրենսդիր ասամբլեա): Հավատացյալների մեծ մասը բողոքական է: Բաժանված է 11 վարչ. օկրուգների: Անդամակցում է ՄԱԿ–ին, Համագործակցությանը: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով շուրջ 5,4 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է ձուկ, կոպրա, կոկոսի յուղ, գղտ. ապրանքներ, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ տալա:

Կղզիները հնագույն ժամանակներից բնակեցված են եղել պոլինեզիացիներով, XVIII դ–ում թափանցել են եվրոպացի գաղութարարները: 1899–ին Արմ. Ս. զավթել է Գերմանիան, իսկ 1914–ին՝ Նոր Զելանդիան: Երկիրն անկախություն է ձեռք բերել 1962–ին՝ կոչվելով Արմ. Ս.: 1997–ին վերանվանվել է Ս–ի:

ՍԱՄՈԱՅԻՆԵՐ, պոլինեզյան ժողդ, Սամոա կղզիների հիմն. բնակիչները (160 հզ.՝ Սամոայում, 60 հզ.՝ Ամերիկ. Սամոայում, 2010): Ապրում են նաև Նոր Զելանդիայում (108,9 հզ., 2001), Ավստրալիայում ևն: Լեզուն՝ սամոաերեն: Հավատացյալները հիմնականում բողոքական են:

ՍԱՄՈՅԼՈՎ Ալեքսանդր Ֆիլիպովիչ (1867–1930), ռուս. ֆիզիոլոգ: Միջնորդանյութերի (մեդիատորներ) վերաբերյալ ուսմունքի և էլեկտրաֆիզիոլոգների ռուս. դպրոցի հիմնադիրներից: Ռուսաստանում ներդրել է էլեկտրասրտագրությունը, հիմնարար աշխ–ները վերաբերում են կենտր. արգելակման հումորալ բնույթի, մկանների, նյարդերի, զգացողության օրգանների ֆիզիոլոգիայի հարցերին:

Լենինյան մրց. (1930):

ՍԱՄՈՅԼՈՎ Անդրեյ Գրիգորևիչ (1907–2002), ռուս. ֆիզքիմիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1976): ՈՒԽՖՍՀ վաստ. գյուտարար: Աշխ–ները վերաբերում են մետաղագործությանը, նյութագիտ–յանը և միջուկ. ռեակտորների տեխնոլոգիային:

Լենինյան (1964), ԽՍՀՄ Պետ. (1949, 1951, 1953, 1970, 1978), ԽՍՀՄ ՆԽ մրց–ներ:

ՍԱՄՈՅԼՈՎ Բորիս Նիկոլաևիչ (1920–1975), ռուս. ֆիզիկոս–փորձարար, ցածր ջերմաստիճանների, գերհաղորդականության և օպտիկայի բնագավառի մասնագետ: Գերբարձր մագնիս. դաշտերի (մինչև 250 *կէ*) ստացման եղանակի հեղինակներից է: ԽՍՀՄ Պետ. մրց. (1969, 1976):

ՍԱՄՈՅԼՈՎ (Կաուֆման) Դավիդ Սամոյլովիչ (1920–1990), հրեա ռուսագիր բանաստեղծ: Հեղինակ է «Երկրորդ անգում» (1963), «Ալիք և քար» (1974), «Լուր» (1978), «Ծովածոց» (1981), «Մի բուռ» (1989) ժող–ների, նաև գրաքննադատ. էսսեների, հուշագրությունների, «Հիշարժան գրառումներ» (հրտ.՝ 1995) գր–հոգեբ. դիմանկարների ժող–ի: Հայ. հրատարակվել է «Ձյունե վերելակ: Բանաստեղծություններ» (1987) ժող–ը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1988):

ՍԱՄՈՅԼՈՎ Եվգենի Վալերիանովիչ (1912–2006), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1974): Տ. Ե. ***Սամոյլովայի*** հայրը: 1934–ից՝ Մոսկվայի Վ. Մեյերհոլդի անվ., 1940–ից՝ Հեղ–յան (այժմ՝ Վ. Վ. Մայակովսկու անվ.), 1968–ից՝ Փոքր թատրոնների դերասան (Համլետ՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», Շույսկի՝ Ա. Կ. Տոլստոյի «Ֆեոդոր Իոաննովիչ ցար», ևն): Նկարահանվել է «Շչորս», «Չորսի սիրտը», «Պատերազմից հետո ժամը 6–ին» և այլ ֆիլմերում:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1946, 1947):

ՍԱՄՈՅԼՈՎ Վլադիմիր Յակովլևիչ (1924–1999), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1984): 1969–ից՝ Մոսկվայի Վ. Մայակովսկու անվ., 1993–ից՝ Ն. Վ. Գոգոլի անվ. դրամատիկ. թատրոնների դերասան (Տարուսով՝ Վ. Կ. Արբրոյի «Տեսեք, ով է եկել», Երմոլան՝ Ա. Մ. Գալինի «Թռչում են չվող թռչունները», ևն): Նկարահանվել է «Պարզևատրում», «Սիբիրհիաղա», «Սերաֆիմ Պոլուբեսը և Երկրի այլ բնակիչները», «Հայրեր և որդիներ» (հեռուստաֆիլմ) և այլ կինոնկարներում: ԽՍՀՄ Պետ. մրց. (1976, 1986):

ՍԱՄՈՅԼՈՎԱ Տատյանա Եվգենևնա (1934–2014), ռուս. կինոդերասանուհի: ՌԴ ժող. արտիստ (1992): Ե. Վ. ***Սամոյլովի*** դուստրը: Ճանաչվել է Վերոնիկայի («Թռչում են կռունկները») դերակատարմամբ: Նկարահանվել է նաև «Աննա Կարենինա», «Ալբա Ռեգիա», «Ադամանդներ պրոլետարների դիկտատուրայի համար», «Նիրվանա» և այլ ֆիլմերում:

ՍԱՄՈՅԼՈՎԻՉ Ռուդոլֆ Լազարևիչ (1881–1940), հրեա բևեռախույզ: Ռուս. Հս. գիտաարդյունագործ. արշավախմբի ղեկ. (1920–25): Հյուսիսն ուսումնասիրող ինստ–ի տնօրենը (1925–30), «Կրասին»

(1928), «Ռուսանով» (1932) սառցահատներով արշավախմբերի պետը: Հայտնագործել է 2 կղզի: Ղեկավարել է «Կոմս Ցեպպելինն» օդապարիկով իրականացված արշավախմբի գիտ. մասը (1931):

ՍԱՄՈՇ (Սոմեշ), գետ Ռումինիայում և Հունգարիայում, Տիսայի ձախ վտակը: Երկ.՝ 411 *կմ*, ավազանը՝ 15,3 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 111 *մ*^{3}/*վ*: Ստորին հոսանքում նավարկելի է: Ափին են Կլուժ Նապոկա, Սատու Մարե (Ռումինիա) ք-ները:

ՍԱՄՈՍ (Samos), կղզի Էգեյան ծովում՝ Հվ. Սպորադներ կղզեխմբում՝ Հունաստանի տարածքում: Տարածքը՝ 476 *կմ*^{2}, բարձր.՝ 1434 *մ*: Կան բազմաթիվ անտիկ կառույցների մնացորդներ: Նվինգստ-ը՝ Սամոս:

ՍԱՄՈՍԱՏ, Շամուշատ, հնագույն ք. *Կոմմագենեում*՝ Եփրատի աջ ափին: Սեպագիր աղբյուրներում հիշատակվում է Կումմախա՝ որպես համանուն պետության մայրաքաղաք: Մ. թ. ա. III դ–ի 1-ին կեսին դարձել է Երվանդունիների Ծոփք-Կոմմագենե միացյալ թագավորության մայրաքաղաքը և Սամոս Ա թագավորի անունով վերանվանվել Ս–ի: ***Մեսրոպ Մաշտոցն*** իր աշակերտների մի խմբի Ս. է ուղարկել՝ հուն. դպրություն սովորելու, այնուհետև անձամբ այցելել Ս.: Ս–ի բյուզ. նվաճումից (958) հետո այնտեղ հաստատվել են մեծ թվով հայեր: Օսմ. տիրապետության շրջանում Ս. մտել է Խարբերդի նահանգ–ի Մալաթիա գավ–ի Հիսն Մանսուր գավոկ–ի մեջ: Մինչև Մեծ եղեռնը Ս–ի բնակիչները հիմնականում եղել են հայեր: Ներկայում մտնում է Թուրքիայի Ադիյամանի իլի մեջ:

ՍԱՄՈՒԻԼ Սամուիլ Աբրամովիչ (1884–1964), ռուս. դիրիժոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1937): Մոսկվայի սիմֆ. (1953–57), Համամիութ. ռադիոյի օպեր–սիմֆ. (1957) նվագախմբերի հիմնադիր–գեղ. ղեկ.: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1947, 1952):

ՍԱՄՈՐԱ (Zamora) Էսեկիել (1817–1860), Վենեսուելայի ժող. հերոս: 1859–ին գլխավորել է լիբերալների ապստամբությունը՝ առիթ դառնալով 1859–63–ի քաղաքաց. պատերազմի սկսվելուն: Քանիցս հաղթել է պահպանողականներին: Սպանվել է:

ՍԱՄՈՐԻ (Samory) Տուրե (մոտ 1840–1900), Վերին Նիգերում մալինկե ժողդ–ի պետության հիմնադիրը (1870–90–ական թթ.), զորավար: Փորձել է եվրոպ. գաղութարարների դեմ պայքարում միավորել Արմ. Աֆրիկայի ժողդ–ներին: 1898–ին ֆրանսիացիները գերել են և աքսորել:

ՍԱՄՊԱՅՈՒ (Sampaio) Ժորժի (ծ. 1939), Պորտուգալիայի նախագահ՝ 1996–2006–ին: 1989–92–ին՝ Սոց. կուս–ան գլխ. քարտուղար, 1989–95–ին՝ Լիսաբոնի քաղաքապետ:

ՍԱՄՍԱՐԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Ջավախքի բարձրավանդակում: Հս–ից ձգվում է մոտ 40 *կմ*, բարձր.՝ մինչև 3301 *մ* (Մեծ Աբուլ լ.): Լանջերը ծածկված են մարգագետն. և լ–տափաստան. բուսականությամբ:

ՍԱՄՍՈՆ, ըստ Աստվածաշնչի՝ Իսրայելի դատավորներից: Օժտված է եղել անսովոր ֆիզ. ուժով, որը թաքնված է եղել նրա երկար մազերում: Ս. գլխավորել է իսրայելացիների պայքարը փղշտացիների դեմ: Ս–ի փղշտուհի հարճ *Դալիլան* կտրել է նրա մազերը քնած ժամանակ և կանչել փղշտացիներին, որոնք էլ բռնել և կուրացրել են Ս–ին: Երբ գերության մեջ Ս–ի մազերն աճել են, և նա կրկին զգացել է իր ուժը, ավերել է հեթանոս. տաճարը Գազայում, որի փլատակներում Ս. զոհվել է իր թշնամիների հետ:

ՍԱՄՍՈՆԻ ՎԱՆՔ, ճարտ. համալիր ՀՀ Տավուշի մարզի Կիրանց գ–ից 15 *կմ* հվ–արմ.: Բաղկացած է XII–XIII դդ–ի 2 եկեղեցուց, մատուռից, բնակելի և տնտ. շինությունների մնացորդներից:

ՍԱՄՍՈՆՅԱՆ Սիմոն (1916–2003), նկարիչ: Հեղինակ է «Մայրական գուրգուրանք», «Երեխաներ», «Եգիպտուհի», «Թախիծ», «Ծովափին», «Մայր ու մանուկ» (1970) և այլ գործերի: Մասնակցել է «Կահիրեի սալոն» արվ–ի միության ամենամյա (ոսկե մեդալ՝ 1964, 1965, 1967), նաև միջազգ. ցուցահանդեսների:

ՍԱՄՍՈՆՈՎ (Սամսոնյան) Ռաֆայել Միքայելի (1926–1999), փիլ.: Փիլ. գիտ. դ–ր (1970), պրոֆ. (1971): Աշխ–ները վերաբերում են կոլեկտիվիզմի և անհատապաշտության փոխհարաբերության փիլ–յանը («Ազգի տեսության խնդիրներ», 1996, ևն):

ՍԱՄՍՈՆՈՎ Սամսոն Իոսիֆովիչ (1921–2002), ռուս. կինոռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1991): 1955–ից՝ Մոսֆիլմի ռեժ. («Թռի–վռի կինը», 1955, «Լավատեսական ողբերգություն», 1963, «Երեք քույր», 1965, «Միայնակներին տրվում է հանրակացարան», 1984, «Մկան թակարդ», 1990, «Խաղատուն», 1992, «Իսկը անգլիական սպանություն», 1976, հեռուստաֆիլմ, ևն):

ՍԱՄՍՈՆՈՎ Վիկտոր Նիկոլաևիչ (ծ. 1941), ռուս. ռազմ. գործիչ, բանակի գեն. (1996): 1990–ից՝ Լենինգրադի ՌՕ զորքերի հրամ.: 1991–ի դեկտ–ից՝ ԽՍՀՄ ՋՈՒ ԳՇ պետ, ԽՍՀՄ պաշտպ–յան նախարարի 1–ին տեղակալ: 1992–93–ին՝ ԱՊՀ միացյալ ՋՈՒ–ի շտաբի պետ, գլխ. հրամ–ի 1–ին տեղակալ: 1996–97–ին՝ ՌԴ ՋՈՒ ԳՇ պետ:

ՍԱՄՍՈՒՆ (Samsun), **Սամսոն** (հնում՝ Ամիսոս), ք. Թուրքիայում, համանուն իլի վարչ. կենտրոնը: Բն.՝ 532 հզ. (2010): Նվինգստ՝ Սև ծովի ափին: Ծխախոտագործության շրջանների խոշոր կենտրոն է: Ս. հիմնադրել են հույները մ. թ. ա. VI դ–ում: Եղել է Պոնտոսի թագավորության (մ. թ. ա. III–I դդ.), Հռոմ., ապա Բյուզ. կայսրությունների կազմերում, իսկ XV դ–ում այն նվաճել են թուրքերը: Ս–ում հնագույն ժամանակներից բնակվել են հայեր, 1914–ին՝ ավելի քան 10 հզ.: Ունեցել են 2 եկեղեցի և 2 վարժարան: Ս–ի ծխախոտի և ալյուրի արդ–յունն ու արտահանումը գրեթե ամբողջովին կենտրոնացված էին հայերի ձեռքում: Մեծ եղեռնի ժամանակ Ս–ի հայերը տեղահանվել ու կոտորվել են:

ՍԱՄՎԵԼ Ա ԱՐԾԿԵՑԻ (ծ. թ. անհտ–526), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 516–ից՝ Աղբիանոսների տոհմից:

ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑԻ, Սամուել Անեցի, Սամուել Երեց (մոտ 1100/05–1185/90), պատմիչ–ժամանակագիր, տոմարագետ, տիեզերագետ: Ս. Ա–ուց մեզ են հասել «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» ժամանակագր. բնույթի պատմ. երկը և «Մեկնութիւն տումարի...» աշխ–ը: Առաջինն ընդգրկում է Արարչագործությունից մինչև 1180–ի դեպքերն ու իրադարձությունները: XII դ–ի անցքերը, որոնք Ս. Ա. շարադրել է որպես ականատես, կարևոր սկզբնաղբյուր են այդ ժամանակի Հայաստանի և Կիլիկիայի հայկ. պետության պատմության ուսումնասիրման համար:

ՍԱՄՎԵԼ ԿԱՄՐՋԱՁՈՐԵՑԻ, X–XI դդ–ի մատենագիր: Եղել է Կամրջաձոր վանքի վանահայրը: Հեղինակ է աստվածաբան. և մեկնող. երկերի: ***Խաչիկ Ա Արշարունու*** հանձնարարությամբ 986–ին գրել է ջատագով. մի թուղթ՝ հունաց Թեոդորոս մետրոպոլիտին:

ՍԱՄՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ, Սասանյան Պարսկաստանի դեմ IV դ–ի 2–րդ կեսի հայ ազատագր. շարժման գործիչ: ***Վահան Մամիկոնյանի*** և Տաճատուհու (***Մերուժան Արծրունու*** քույրը) որդին: Պարսկ. կողմնորոշման և Մերուժան Արծրունուն զինակցելու համար սպանել է հորը և մորը: Եղել է ***Արշակ Գ***–ի մերձավոր զինակիցներից: Ս. Մ–ի կերպարի շուրջ է հյուսված Բաֆֆու «Սամվել» պատմավեպը:

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ, հիմնադրվել է 1832–ին Իտալիայի Պադուա ք–ում Մխիթարյանների նախաձեռնությամբ՝ մեծահարուստ Սամվել Մուրադյանի կտակի համաձայն: 1846–ին տեղափոխվել է Փարիզ՝ Սևր, 1870–ին՝ Վենետիկ, միացել Ռափայելյան վարժարանին, կոչվել ***Մուրադ–Ռափայելյան վարժարան***: 1929–ին վերաբացվել է Փարիզում: Գործում է ֆրանս. լիցեյի ծրագրով: Վերջին տարիներին վարժարանին կից հիմնադրվել է մշակույթի կենտրոն:

ՍԱՄՎԵԼՅԱՆ Ալեքսանդր Մսացականի (1922–2010), գինեգործ: Տեխ. գիտ. դ–ր: Խաղողագործության և գինեգործության միջազգ. ակադ–ի անդամ (1998): Աշակերտել է սևապտուղ խաղողի կնճեռից «Էխներկանյութ» և «Էնովիտամին» ստանալու տեխնոլոգիա: Համահեղինակ է 2 սեղանի անապակ, 1 կիսաքաղցր և 6 աղանդեր. գինիների: Որդին՝ **Գարուշ Ս.** (ծ. 1961), գինեգործ: Տեխ. գիտ. թեկնածու (1990): 2012–ին հիմնադրել է գինու արտադր–յան «Վայն Հաուս» ընկ–ը (ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Աղցք), որն արտադրում է ընտիր գինիներ՝ իր աճեցրած խաղողից: Թողարկում է «Սարդուրի» սպիտակ, կարմիր և քաղցր մուսկատ գինիներ:

ՍԱՄՎԵԼՅԱՆ Լյովա Արտավազդի (ծ. 1940), մարզիկ, մանկավարժ: Մանկավարժ. գիտ. թեկնածու (1970), պրոֆ. (1992): ԽՍՀՄ սպորտի (1958), պատվ. (1961) վարպետ: ՀՀ ֆիզ. կուլտուրայի և ս. վ. գ. (2014): Աշխ–ները վերաբերում են ըմբիշների կրթության, տեխ. կատարելագործման հարցերին: ՀԱՕԿ «Արդարացի խաղ» կոմիտեի փոխնախագահ (1996–2004), նախագահ (2004–ից): Միջազգ. տեղեկագիտ–յան ակադ–ի թղթ. անդամ (1986–ից): ՖԿՀՊԻ ոսկե, «Հրանտ Շահինյան» (երկուսն էլ՝ 2015) մեդալներ:

ՍԱՄՎԵԼՅԱՆ Լուիզա Օնիկի (1926–1998), թատերագետ: Արվեստագիտ. դ–ր (1970), պրոֆ. (1972): Հեղինակ է «Ադամյանը և Շեքսպիրի կերպարները» (1961), «Լևոն Քալանթար» (1965), «Շեքսպիրը և հայ գրական ու թատերական մշակույթը. նախասովետական շրջան» (1974), «Կինը հայ բեմարվեստում» (1980) և այլ աշխ–ների:

ՍԱՄՎԵԼՅԱՆ Յուրիկ Արտավազդի (1939–2010), քանդ.: Լուսիկ ***Ագուլեցու*** ամուսինը: Հեղինակ է «Պատանեկություն» (1971), «Մոմիկ» (1988, Իջևան), «Աստղիկ» (1980), «Երգիչ Հ. Բադալյան» (2005), «Մովսես Գեորգիսյան» (2010, երեքն էլ՝ դիմաքանդակ), «Բեկոր» (Աշոտ Ղուլյանի հուշարձանը, 1996), «Նիկող Դուման» (1997, Մտեփանակերտ), «Միսաք Մանուշյան» (2011, երկուսն էլ՝ կիսանդրի), «Գրիգոր Լուսավորիչը մկրտում է Տրդատ թագավորին» (2002, քանդակ, Երևան) և այլ գործերի:

ՍԱՄՎԵԼՅԱՆ Վալյա Վարդանի (1937–1990), երգչուհի: Արա ***Գևորգյա***

նի մայրը: 1952–ից՝ Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության ժող. գործիքների անսամբլի մեներգչուհի: Երգացանկում՝ Կոմիտասի, Սայաթ-Նովայի, Ա. Հեքիմյանի, Խ. Ավետիսյանի, Աշոտի, Շահենի և ուր. երգերից («Անուշիկ իմ քույրիկ», «Անցար այգուս նայելով», «Ջով գիշեր», «Շորորա» ևն):

Հայաստանի երիտասարդ. փառատոնի ոսկե մեդալ (1957):

ՍԱՄՎԵԼՅԱՆ Վերոնիկա Մինասի (ծ. 1924), դեղաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1969), պրոֆ. (1986): 1998-ից՝ Ավստրալիայում: Աշխ-ները վերաբերում են խոլինոլիտիկ, հակաջղաձգ., տեղային անզգայացնող, հակաանոհթմ. ազդեցության նոր դեղանյութերի որոնման խնդիրներին: Առաջարկել է «Էնտեպալ» սարքը՝ գործն. բժշկության մեջ պարկինսոնիզմի, խոց. հիվանդության և կրծքային հեղձուկի բուժման համար: Բացահայտել է ՆՕՔՀ-ում սինթեզված որոշ պատրաստուկների հակաայտուց. և հակաանոհթմ. ակտիվությունը: ՀԽՍՀ Պետ. մրց. (1978):

ՍԱՄՅԽԵ–ՋԱՎԱԽՔԻ ԵՐԿԱՄԱՍ (մխաթե), վտմ Վրաստանի հվ-արմ-ում: Սահմանակից է ՀՀ-ին և Թուրքիային: Տարածքը՝ 6413 *կմ*², բն.՝ 160,5 հզ. (2016): Ներառում է 6 մունիցիպալիտետ (*Ախալքալաքի, Նինոծմինդայի, Ասպինձայի, Ախալցխայի, Բորժոմի, Ադիգենիի*): Վարչ. կենտրոնը՝ *Ախալցխա*:

Ժամանակակից Ս.–Ջ. ե-ի մի մասը մտնում էր պատմ. *Գուգարք* նահզ-ի *Ջավախք* գավառի մեջ: Ներկայում հայերը կազմում են մարզի բնակչության շուրջ 54 %-ը (2014),, որոնք ապրում են հիմնականում Ախալցխայի, Ախալքալաքի, Նինոծմինդայի շրջաններում:

ՍԱՄՅԽԵ–ՍԱԱԹԱԲԱԳՈ, Վրաց. իշխանություն XIII–XVII դդ-ում՝ Ախալցիխե կենտրոնով: XVI դ-ի սկզբից վասալ. կախմալ մեջ է եղել Օսմ. սուլթանությունից, 1620-ական թթ-ին լիովին կորցրել է ինքնուրույնությունը:

ՍԱՄՈՒԵԼՅԱՆ Խաչիկ Ստեփանի (1873–1940), իրավագետ, պատմաբան, ազգագրագետ, բանասեր, թարգմանիչ: 1924-ից՝ ՀՍԽՀ պետ. կենտր. արխիվի տնօրեն: Հեղինակ է «Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» ու հայոց քաղաքացիական իրաւունքը» (1911), «Հայ հին իրավունքի պատմություն» (հ. 1, 1939), «Հին Հայաստանի կուլտուրան» (հ. 1–3, 1931–41) և այլ աշխ-ների:

ՍԱՄՈՒԵԼՅԱՆ Հարություն Արամի (ծ. 1947), նկարիչ-ձևավորող: Հեղինակ է ՀՀ և ԼՂՀ առաջին (նամականիշների մրցույթի գլխ. մրց.,1992) նամականիշների, գրաֆիկ. գործերի, ծաղրանկարների, գրքերի պատկերազարդումների (Ս. Շահմուրադյանի «Մեր քաղցր հողը», 2004, «Հայոց պատերազմները և ռազմարվեստը», մատենաշար՝ հ. 1–2, 2009, 2013, ևն): Համահեղինակ է ՀՀ պետ. զինանշանի ժամանակակից գրաֆիկ. մեկնության:

ՍԱՄՈՒԵԼՍՈՆ (Samuelsson) Բենգտ (ծ. 1934), շվեդ կենսաքիմիկոս: Ուսումնասիրել է պրոստագլանդինների քիմ. կառուցվածքը և կենսաքիմ. հատկությունները:

Նոբելյան մրց. (1982, Ս. *Բերգստրյոմի* և Ջ. Ռ. *Վեյնի* հետ):

ՍԱՄՈՒԻԼ, Սամուել (ծ. թ. անհտ–1014), Արմ. Բուլղարիայի հայազգի թագավոր՝ 997-ից: Կոչվել է Սամուել «Կոմսաձագ»: Ազատագրել է Բուլղարիայի նշանակալի մասը, ընդարձակել պետության սահմանները, ամրապնդել երկրի ներքին դրությունը:

ՍԱՄՈՒՄ (արաբ.), չոր, տաք քամի Հս. Աֆրիկայի և Արաբ. թ-կղզու անապատներում, հաճախակի ուղեկցվում է ավազ. փոթորիկներով:

ՍԱՄՈՒՅՐ (Martes zibellina), կզաքիսների ընտանիքի մորթատու կենդանի: Մորթին խիտ է, գեղեցիկ ու նուրբ: Մարմնի երկ.՝ 43– 56 *սմ*, կ. զ.՝ 0,8–1,9 *կգ*: Տարածված է հիմնականում տայգայում: Մորթադրդյունագործ. և գազանաբուծ. հիմն. կենդանիներից է: Բնության մեջ անտառ. կզաքիսի (կիդաս) հետ տալիս է ծնած:

ՍԱՄՈՒՐ, գետ ՌԴ-ում՝ Դաղստանում (մասամբ՝ Ադրբեջանի սահմանով): Երկ.՝ 213 *կմ*, ավազանը՝ 7330 *կմ*², գետաբերանում ջրի միջին ծախսը՝ 70,2 *մ*³/*վ*: Թափվում է Կասպից ծովը: Ս–ից սկիզբ են առնում Սամուր-Ապշերոն և Սամուր-Դերբենտ ջրանցքները:

ՍԱՄՈՒՐԱՅՆԵՐ (ճապոն.՝ սամուրաու – ծառայել), լայն առումով՝ ճապոնիայում աշխարհիկ վերնախավ, իսկ նեղ և հաճախ օգտագործվող առումով՝ մանր ազնվականների ռազմ. խավը: «Ս.» տերմինը հաճախ օգտագործվում է նշելու համար ճապոն. զինվորականությանը:

ՍԱՄՈՒՐԱՆԵՎ Վարդերես Վարդերեսի (ծ. 1979), հունա-հռոմ. ոճի ըմբիշ: ՌԴ ս. վ. վ. (2000): Ռուսաստանի 6-ակի (1998–2000, 2002, 2004, 2006), Եվրոպայի (2000, 2006), աշխարհի (2002, 2005) կրկնակի, օլիմպ. խաղերի (2000) չեմպիոն: 2013-ին ստացել է ՀՀ քաղաքացիություն: ՌԴ «Պատվո նշան» (2001), Բարեկամության (2006) շքանշաններ:

ՍԱՅԱԴՅԱՆ Բագրատ Գևորգի (1902–1975), մանկաբարձ-գինեկոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (1962), պրոֆ. (1963): ՀԽՍՀ վաստ. բժիշկ (1944): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1970): Աշխ-ները վերաբերում են ՀԽՍՀ-ում մայրության ու մանկության պահպանության, մանկ. գինեկոլոգիայի, վաղաժամ ծննդաբերության և հետծննդյան օգնության կազմակերպմանը: ՀԽՍՀ ԱՆ գլխ. մանկաբարձ-գինեկոլոգ (1954–70):

ՍԱՅԱԴՅԱՆ Լևոն Հակոբի (1949–2014), շաշկիստ: Գրոսմայստեր: ԽՍՀՄ չեմպիոն (1983), փոխչեմպիոն (1982):

ՍԱՅԱԴՅԱՆ Կառլոս (Կառլեն) Միշայի (ծ. 1948), նկարիչ: Հեղինակ է հիմնականում կոմպոզիցիաների («Բնանկարներ», 1975–ից, «Լողացողներ», 1990–ից, «Առևանգում», 1990–ից, «Մանեքեններ», 1997-ից, բոլորը՝ շարքեր, «Հավասարակշռություն», 1992, «Կերպարանափոխություն», 2003, ևն):

ՍԱՅԱԴՅԱՆ Համբարձում Գերասիմի (1909–1991), ճարտարագետ, քիմիկոս-տեխնոլոգ: Տեխ. գիտ. թեկնածու (1945), դոցենտ (1945): ՀԽՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1970): Նրա ղեկավարությամբ մշակվել են բենզոլի քլորացման (անընդհատ եղանակ), հեքսաքլորէթանի, քլորոպրենն. կաուչուկի թափոններից սինթետիկ լաքի և նատրիումի ացետատի ստացման տեխնոլոգիաներ:

ՍԱՅԱԴՈՎ Արամայիս Վահանի (ծ. 1938), հունա-հռոմ. ոճի ըմբիշ, մարզիչ: ԽՍՀՄ (1965), միջազգ. կարգի (1965) ս. վ.: ԽՍՀՄ քառակի (1958, 1961, 1963, 1965), աշխարհի (1961) չեմպիոն, Եվրոպայի առաջնության մրցանակակիր (1966): Միջազգ. կարգի մրցավար: Բաքվի հայկ. ջարդերից հետո տեղափոխվել է Կիև: Եղբայրը՝ **Գևորգի Ս.** (ծ. 1931), ազատ ոճի ըմբիշ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1953): ԽՍՀՄ կրկնակի (1953, 1958) չեմպիոն, աշխարհի գավաթի հաղթող (1958):

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ (Արութին, Հարություն, 1712, 1717 կամ 1722–1795), բանաստեղծ-աշուղ, հայ տաղերգության խոշոր ներկայացուցիչ: Գրել է թուրք. և վրաց., 1752-ից՝ հայ.: Ս-Ն-ից պահպանվել են մոտ 70 հայ., ավելի քան 120 թուրք. և շուրջ 30 վրաց. երգեր (խաղեր): Նրա երկերը կառուցվածքով աշուղ. արևելյան են, սակայն բովանդակային խորքով, պատկերային համակարգով և գաղափարներով հարազատ են բուն ազգ. մշակույթին: Հեղինակ է սիրային («Աշխարհումս ախ չիմ քաշի…», «Յիս քու ղիմեթն չիմ գիտի…», «Մեջլումի պես կորավ յարս…» ևն), նաև մարդասիր., խոհախրատ., երգիծ. խաղերի: Շարունակելով *Նաղաշ Հովսաթանից* սկզբնավորված ավանդույթը՝ Ս-Ն. իր խաղերի մի մասն ինքն է եղանակավորել: Ս-Ն. նաև առաջնակարգ երաժիշտ-կատարող է եղել: Նրա ստեղծագործությունը մեծապես ազդել է հետագա հայ աշուղների և բանաստեղծների վրա: Ամեն տարվա մայիսի վերջին կիրակի օրը Թիֆլիսում տոնվում է սայաթնովյան Վարդատոնը, որը սկզբնավորվել է 1914-ին՝ Հ. Թումանյանի նախաձեռնությամբ (այդ օրը բացվել է աշուղի շիրմաքարը):

Ս-Ն-ի օգտագործած եղանակների հիմքը հայ մոնոդիկ երաժշտությունն է, որի ինչերանգներն ու ձայնակարգերը նրա մեղեդիների գլխ. գործոնն են: Այնտեղ առկա են նաև Թիֆլիսի կենցաղ. երաժշտության տարրեր և բնորոշ գծեր, որոնք վերաձուլելով և վերարտադրելով ստեղծել է **սայաթնովյան ոճ**: Ս-Ն-ից պահպանվել են սակավաթիվ երգեր («Բլբուլի հիդ…», «Դուն էն գլխեն իմաստունիս…», «Մե խոսկ ունիմ…», «Էշին վառ կրակ…», «Առանց քիզ ինչ կոնիմ…», «Քանի վուր ջան իմ…» ևն), որոնք ընդգրկում են հայ աշուղ. երգի ռիթմաինտոնացիոն և ձևի կարևորագույն տեսակները: Ս-Ն. նաև նշանավոր կատարող էր (նվագակցել է սազով, չոնգուրով, ապա՝ քամանչայով): Նրա արվ-ը մեծապես նպաստել է հայ աշուղ. արվ-ի զարգացմանը, նկատելիորեն ազդել կոմպոզիտոր. ստեղծագործության վրա:

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ԵՐԳԻ ԱՆՍԱՄԲԼ, հիմնադրվել է Երևանում 1938-ին՝ ռադիոկոմիտեի ժող. գործիքների անսամբլի հիման վրա (ղեկ.՝ Շարա *Տալյան*), 1943-ից՝ Սայաթ-Նովայի անվ., 1946-ից՝ վաստ.: Երկացանկում՝ Պաղտասար Դպիրի, Սայաթ-Նովայի, Միսկին-Բուրջիի, Զիվանու, Շերամի, Հավասու, Աշոտի և ուր. հայ կոմպոզիտորների, նաև տարբեր ժողդ-ների երգեր: Գործել է մինչև 1969-ը:

ՍԱՅԱՆ (Saillant) Լուի (1910–1974), Արհմիությունների համաշխ. դաշնության գլխ. քարտուղար՝ 1945–69-ին, 1969-ից՝ պատվ. նախագահ և Ֆրանսիայի Աշխ-ի համընդհանուր համադաշնության քարտուղար: Դիմադրության շարժման ղեկ-ներից: 1974-ին՝ Խաղաղության համաշխ. խորհրդի պատվ. նախագահ: Լենինյան միջազգ. մրց. (1958):

ՍԱՅԳԱԿ, սայգա (Saiga tatarica), սնամեջ եղջերավորների ընտանիքի երկսմբակավոր կենդանի: Երկ.՝ մինչև 1,4 մ: Քիթը երկար է, կնճիթանման: Արուների եղջյուրները քնարաձև են (երկ.՝ մինչև 40

սմ): Ապրում է Ղազախստանի, Միջին Ասիայի, Մոնղոլիայի և Արմ. Չինաստանի տափաստաններում և կիսաանապատներում: Հոտային կենդանի է, վազում է 70–80 *կմ/ժ* արագությամբ: ԽՍՀՄ-ում 1919–50-ին որսն արգելվել է. թվաքանակը վերականգնվել է: Կառավարելի արդյունագործ. կենդանի է:

ՍԱՅԴԱ. (Pollachius virens), ձողաձկների ընտանիքի ձուկ: Երկ.՝ մինչև 1,2 *մ*, կ. զ.՝ մինչև 10 *կգ*: Տարածված է Եվրոպայի հս. ափի և Հս. Ամերիկայի Ատլանտ. օվկ-ի առափնյա երկ-յամբ: Արդյունագործ. ձուկ է:

ՍԱՅԴԱ, ք. Լիբանանում, Հվ. Լիբանան մուհաֆազի վարչ. կենտրոնը: Բն.՝ 58,9 հզ. (2010): Նվինգստ՝ Միջերկր. ծովի ափին: Հիմնադրել են փյունիկեցիները մ. թ. ա. IV հզ-ամյակում: Ս-ում պահպանվել են հռոմ. նավահանգստային կառույցների ավերակներ, Սբ Լյուդովիկոսի (XII դ.), խաչակիրների ծով. (XIII դ.) ամրոցները, Մեծ մզկիթը (XIII դ.), քարվանսարայը (XVI–XVII դդ.):

ՍԱՅԹԱՄԱ, ք. Ճապոնիայում՝ Հոնսյու կղզում՝ Տոկիոյի ագլոմերացիայում: Բն.՝ 1,22 մլն (2010): Զարգացած են կենսատեխնոլոգ. հետազոտություններն և փորձակոնստրուկտոր. աշխ-ները: Կազմավորվել է 2001-ին՝ Ուրավա, Օմիյա, Յոնո և Իվացուկի (2005) ք-ների միավորումով:

ՍԱՅԻԴ ԱՀՄԱԴ-ԽԱՆ (1817–1898), Հնդկաստանում մահմեդ. լուսավորականության շարժման հիմնադիրը: Հանդես է եկել իսլամի բարեփոխման օգտին: Միաժամանակ մահմեդ. համայնքին քարոզել է մեկուսանալ:

ՍԱՅԻԴ ՀԱԼԻՄ (Said Halim) փաշա (1863–1921), երիտթուրքերի պարագլուխներից և Հայոց ցեղասպանության գլխ. հանցագործներից: 1913-ին՝ մեծ վեզիր, միաժամանակ՝ «Միություն և առաջադիմություն» կուս-յան գլխ. քարտուղար: ԱՀՊ-ի վերջին շրջանում մեծ վեզիրի պաշտոնը զիջել է *Թալեաթին*: Ենթարկվել է պատասխանատվության, 1921-ին ազատ է արձակվել: Նույն թվականի դեկտ. 6-ին Հռոմում նրան սպանել է վրիժառու Արշավիր *Շիրակյանը*:

ՍԱՅԻԴ-ԳԱԼԻԵՎ, Սահիբ-Գարեյ (1894–1939), խորհրդ. պետ. և կուս. գործիչ: 1920–21-ին՝ Թաթար. ԻՍԽՀ հեղկոմի, ԺԿԽ նախագահ, 1921–24-ին՝ Ղրիմի ԻՍԽՀ ԺԿԽ նախագահ: Գնդակահարվել է, արդարացվել:

ՍԱՅԻՍ, հինեգիպտ. ք. Նեղոսի դելտայում, Եգիպտոսի մայրաքաղաքը XXVI (այսպես կոչված, Սայիայան) հարստության օրոք՝ մ. թ. ա. 663–525-ին:

ՍԱՅԼ, անվավոր փոխադրամիջոց: Լինում է երկանիվ և քառանիվ: Հայաստանի բրոնզիդար. (մ. թ. ա. XV–XIV դդ.) հնավայրերից (Լճաշեն, Ներքին Գետաշեն ևն) հայտնաբերվել են երկանիվ և քառանիվ Ս-եր:

ՍԱՅԼԵՐԳ, հայկ. ժող. աշխ. երգ, *հորովելի* տեսակ: Երգել են հնձած խոտը կամ բերքը սայլին բարձելու և տեղափոխելու ժամանակ: Բանաստեղծ. տեքստն ազատ է, երաժշտ. կառուցվածքը՝ իմպրովիզացիոն՝ *աաերգի* տարրերով: Ս-ին մոտ է *կալերգը*:

ՍԱՅԿԱ. (Boreogadus saida), **արկտիկական ձողաձուկ,** ձողաձկների ընտանիքի ձուկ: Երկ.՝ մինչև 32 *սմ*: Ապրում է Հս. ծովերում: Արդյունագործ. ձուկ է:

ՍԱՅՄԱ. (Saimaa), լճերի համակարգ Ֆինլանդիայի հվ-արմ-ում: Մակերեսը՝ մոտ 4400 *կմ*^{2}, խոր.՝ մինչև 82 *մ*: Վուոկսա գետով ջրերը հոսում են Լադոգա լիճը: Համանուն ջրանցքով միանում է Ֆինն. ծոցին: Նավարկելի է: Կա ձկնաբուծություն:

ՍԱՅՄԻՐՆԵՐ (Saimiri), **մեռած գլուխ,** կառչնապոչ կապիկների սեռ: Մարմնի երկ.՝ մինչև 30 *սմ*, պոչը մարմնից երկար է, ոչ բռնող: Աչքերը, բերանը և ականջները եզերված են մուգ ֆոնի վրա վառ արտահայտված սպիտակ հատվածներով (այստեղից՝ 2-րդ անվանումը): Հայտնի է 2 տեսակ՝ Կենտր. և Հվ. Ամերիկայում: Ապրում են մեծ խմբերով՝ գետամերձ անտառներում: Լաբորատոր կենդանիներ են:

ՍԱՅՄՈՆ (Simon) Հերբերտ (1916–2001), ամերիկացի տնտեսագետ, սոցիոլոգ: Աշխ-ները վերաբերում են կառավարման տեսության, սոցիալ. գործընթացների մոդելավորման խնդիրներին: Նոբելյան մրց. (1978):

ՍԱՅՈՆՋԻ Կիմմոտի (1849–1940), Ճապոնիայի վարչապետ՝ 1901–02, 1906–08 և 1911–12-ին: Փարիզի հաշտության խորհրդաժողովում (1919–20) գլխավորել է ճապոն. պատվիրակությունը:

ՍԱՅՍ, հինեգիպտ. ք. Նեղոսի դելտայում: Եգիպտոսի փարավոնների XXVI հարստության մայրաքաղաքը՝ մ. թ. ա 663–525-ին:

ՍԱՅՏՈ Սակոտո (1858–1936), Ճապոնիայի վարչապետ՝ 1932–34-ին: Ծովակալ (1916): 1919–27 և 1929–31-ին՝ Կորեայի գեն-նահանգապետ: Սպանվել է:

ՍԱՅՐԱ. (Cololabis saira), թյունիկագայլաձկների ընտանիքի ձուկ: Երկ.՝ մինչև 30 *սմ*, կ. զ.՝ 200 *գ*: Տարածված է Խաղաղ օվկ-ի մերձարևադարձ. և բարեխառն ջրերում, այդ թվում՝ Կուրիլյան կղզիների մոտ, Ճապոն. ծովում և Օխոտի ծովի հվ. մասում: Արդյունագործ. կարևոր ձուկ է:

ՍԱՅՓԱՆ (Saipan), կղզի Խաղաղ օվկ-ի արմ-ում՝ Միկրոնեզիայում՝ Մարիանյան կղզեխմբում: Տարածքը՝ 122 *կմ*^{2}: Կղզում է Հս-մարիանյան կղզիների վարչ. կենտրոնը:

ՍԱՅՔՍ-ՊԻԿՈՅԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 1916, գաղտնի համաձայնագիր Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև՝ օսմ. Թուրքիայի ասիական տիրույթները բաժանելու մասին: Ստորագրել են (մայիս) Մեծ Բրիտանիայի ԱԳ նախարար Է. Գրեյն ու Ֆրանսիայի դեսպան Պ. Կամբոնը Լոնդոնում: Կոչվել է նախագիծը պատրաստած դիվանագետների՝ Մ. Սայքսի (Մեծ Բրիտանիա) և Ժ. Պիկոյի (Ֆրանսիա) անուններով: Նախատեսվել է ստեղծել 5 գոտի. Ռուսաստանին անցնող տարածքները (այդ թվում՝ Արմ. Հայաստանը) պետք է կազմեին «դեղին» գոտին: 1917-ի նոյեմբ. վերջին Խորհրդ. Ռուսաստանից Կառ-յունը հրապարակել է Ս-Պ. հ-ի տեքստը և չեղյալ համարել: Դաշնակիցների միջև ստեղծված ուժերի նոր հարաբերակցության պայմաններում համաձայնագիրը վերանայվել է հօգուտ Մեծ Բրիտանիայի (տես *Սան Ռեմոյի խորհրդաժողով 1920, Սևրի հաշտության պայմանագիր 1920*):

ՍԱՆ ԱՆՏՈՆԻՈ (San Antonio), ք. ԱՄՆ Տեխասի նահ-ում: Բն.՝ 1,4 մլն, ագլոմերացիայում՝ 1,9 մլն-ից ավելի (2010): Տրանսպորտ. հանգույց է: Ունի օդանավակայան, թանգարաններ: Առևտրաֆինն. և զբոսաշրջության կենտրոն է: Ռազմ. և ռազմաօդ. խոշոր հենակետ է: Պահպանվել է Սան Ֆեռնանդո տաճարը (XVIII դ.): Հիմնադրվել է 1718-ին:

ՍԱՆ ԴԻԵԳՈ (San Diego), ք. ԱՄՆ Կալիֆոռնիայի նահ-ում՝ Խաղաղ օվկ-ի ափին: Բն.՝ 1,3 մլն, ագլոմերացիայում՝ մոտ 3,1 մլն (2010): Կան ռազմածով. նվինգստ-ներ և հենակետեր (ԱՄՆ ՌԾՈՒ-ի խոշոր կենտրոնացում): Զարգացած են նավաշինության և նավաշինանորոգման, բարձր տեխնոլոգիաների, էլեկտրոն. արդ-յան ճյուղերը: Զբոսաշրջության կենտրոն է (30 մլն մարդ՝ 1 տարում): Հիմնադրվել է 1769-ին: Ս. Դ-ում է Սան Դիեգո դե Ալկալա առաքելությունը (1769), արվարձանում՝ Լա Օյյա Ի. Տիլլա կառույցները, կենսբ. հետազոտությունների ինստ-ի շենքը (1953–66, ճարտ.՝ Լ. Կան):

ՍԱՆ ԼՈՒԻՍ (São Luis), պրովինցիա Արգենտինայի կենտր. մասում: Տարածքը՝ 76,7 հզ. *կմ*^{2}, բն.՝ 432,3 հզ. (2010), հիմնականում իսպանացիների և իտալացիների ժառանգներ են, կան նաև խառնածիններ: Հավատացյալները կաթոլիկ են: Վարչականորեն բաժանված է 9 դեպարտամենտի: Վարչ. կենտրոնը՝ Սան Լուիս: Տարածքի մեծ մասում միջին բարձր-յան լեռներ են (Սիեռա դե Սան Լուիս, Սիեռա դե լոս Կոմեչինգոնես): Հվ. մասը հարթավայրային է: Ծայրամասում է Պամպա դե լաս Սալինաս լիճը: Խոշոր գետը Ռիո Կինտոն է: Կլիման՝ չոր և բարեխառն: Տարեկան տեղումները՝ 500 *մմ*: Զարգացած է զբոսաշրջությունը: 2005-ի սեպտ. 27–հոկտ. 16-ը Ս. Լ-ում անցկացվել է շախմատի աշխարհի առաջնություն:

ՍԱՆ ԼՈՒԻՍ, ք. Բրազիլիայի հս-արլ-ում, Մարանյան նահնգ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1 մլն-ից ավելի (2010): Նվինգստ՝ Ատլանտ. օվկ-ի ափին: Ունի օդանավակայան: Կան ճարտ. հուշարձաններ (XVII–XX դդ-ի): Պատմ. կենտրոնը Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՍԱՆ ԼՈՒԻՍ ՊՈՏՈՍԻ (San Luis Potosi), ք. կենտր. Մեքսիկայում, համանուն նահնգ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 730 հզ. (2010): Հնագույն (XVI–XVII դդ.) լեռնարդ-յան կենտրոն է (արդյունահանում են արծաթ, կապար, ցինկ, պղինձ): Հիմնադրվել է XVI դ-ում: Կա բարոկկո ոճի եկեղեցի (XVII–XVIII դդ.):

ՍԱՆ ԽՈՍԵ (San José), *Կոստա Ռիկայի* մայրաքաղաքը: Բն.՝ 347,3 հզ., ագլոմերացիայում՝ 2,7 մլն (2010): Ունի օդանավակայան, համալսարան, թատրոն, թանգարաններ, Լեզուների ակադ.: Զարգացած է էլեկտրոն., էլեկտրատեխ., կաշվի-կոշիկի, տեքստիլ, սննդի, քիմ. և արդ-յան այլ ճյուղեր: Կան ճարտ. հուշարձաններ (XVIII դ.): Հիմնադրվել է 1737–58-ին:

ՍԱՆ ԽՈՍԵ, ք. ԱՄՆ Կալիֆոռնիայի նահնգում: Բն.՝ 978 հզ., ագլոմերացիայում՝ 1,8 մլն (2010): Սիլիկոնային հովտում (Silicon Valley) է: Զարգացած են ԳՀ և փորձարարակոնստրուկտոր. մշակումների բնագավառը և էլեկտրոնիկայի արտադր-յունը (համակարգչ. տեխնիկա, միկրոպրոցեսորներ), ՏՏ, հրթիռաշինությունը, ռազմ. արդ-յունը: Ս. Խ-ում կան միջազգ. խոշոր ընկ-ների, ինովացիոն ֆիրմաների գրասենյակներ:

ՍԱՆ ԽՈՒԱՆ (San Juan), *Պուերտո Ռիկոյի* մայրաքաղաքը: Բն.՝ 405,5 հզ. (արվարձաններով՝ 14,97 մլն, 2010): Նվինգստ է: Ունի օդանավակայան, համալսարաններ: Զարգացած են սննդի, ծխախոտի, տեքստիլ, քիմ., նավթավերամշակման արդ-յան ճյուղերը: Հիմնադրել են իսպանացիները 1508-ին՝ Կապառա անվամբ, 1521-ին քա-

դաքը տեղափոխվել է այլ վայր և անվանափոխվել Պուերտո Ռիկոյի: Այս անունը ժամանակի ընթացքում անցել է կղզուն, քաղաքը վերստացել է Ս. Խ. անվանումը: Պահպանվել են XVI–XVIII դդ–ի ամրությունները, շենքեր: Հին քաղաքը Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՍԱՆ ԽՈՒԱՆ, ք. Արգենտինայի արմ–ում, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 492 հզ. (2010): Խաղողագործության և բանջարաբուծության շրջանների կենտրոն է: Հիմնադրվել է 1562–ին, բազմից ավերվել է երկրաշարժերից:

ՍԱՆ ԿՐԻՍՏՈԲԱԼ (San Cristóbal), խորջրյա փողրակ Խաղաղ օվկ–ի հվ–արմ–ում: Ձգվում է Սողոմոնյան կղզու հվ. մասով: Երկ.՝ 605 *կմ*, լայն.՝ 28 *կմ*, առլգն խոր.՝ 8487 *մ*: Արլ–ում միանում է խորջրյա Սանտա Կրուս փողրակին:

ՍԱՆ ԿՐԻՍՏՈԲԱԼ, ք. Վենեսուելայի արմ–ում՝ Պանամերիկ. մայրուղու վրա: Տաչիրա նահանգի վարչ. կենտրոնը: Բն.՝ 364 հզ. (2010): Սուրճի առեւտրման շրջանի կենտրոն է: Ունի համալսարաններ: Հիմնադրվել է 1561–ին:

ՍԱՆ ՄԱՐԻՆՈ (San Marino), **Սան Մարինոյի Հանրապետություն** (Repubblica di San Marino), պետություն Հվ. Եվրոպայում՝ Ապենինյան թ–կղզում: Անկլավ է՝ շրջափակված Իտալիայի տարածքով: Տարածքը՝ 61 *կմ*^{2}, բն.՝ 30,2 հզ. (2009): Մայրաքաղաքը՝ Սան Մարինո (4,4 հզ.): Պետ. լեզուն՝ իտալ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետությունը ղեկավարում են 2 կապիտան–ռեգենտները: Օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարան (Մեծ գլխ. խորհուրդ): Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է: Բաժանված է 9 վարչ. միավորների (տարածաշրջ. ամրոցներ): Անդամակցում է ՄԱԿ–ին, Աֆրիկ. միությանը: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 36 հզ. ԱՄՆ դոլար է (2012): Արտահանում է գինի, շինանյութ, խեցեգործ. ապրանքներ, կաշի ևն, ներմուծում նավթ և նավթամթերք, մեքենաներ ու սարքավորումներ, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ եվրո:

Ս. Մ. Եվրոպայի ժամանակակից պետություններից ամենահինն է. առաջացումը վերագրվում է 301–ին: Ըստ ավանդության՝ Ս. Մ. հիմնել է քարտաշ քրիստոնյա Մարինոն, որ փախել էր Դալմաթիայից՝ կրոն. հետապնդումներից (հետագայում սրբադասվել է, այստեղից՝ «սան»–սուրբ): Հետագայում Ս. Մ. մտել է Ռավեննայի էքզարքության և Լանգոբարդյան թագավորության մեջ: 1739–ին Ս. Մ. զավթել են պապական զորքերը, սակայն 1740–ին Կղեմես XII պապը ճանաչել է հանրապետության անկախությունը: 1862–ին Ս. Մ. բարեկամության և բարիդրաց. հարաբերությունների պայմանագիր է կնքել Իտալիայի հետ:

ՍԱՆ ՄԱՐԿՈ (San Marco), իտալ. ծով. տիեզերական Հնդ. օվկ–ում (Ֆորմոզայի ծոց)՝ Քենիայի ափերից 5 *կմ* հեռու՝ 2 լողացող (1–ինն՝ աշխարհում) հարթակների վրա: Արձակվել են «Ս. Մ.», «Էքսփլորեր» (ԱՄՆ) և «Արիել» (Մեծ Բրիտանիա) սերիայի ԵԱՄ: Այժմ չի գործում:

ՍԱՆ ՄԻԳԵԼ (San Miguel), ք. Սալվադորում՝ Պանամերիկ. մայրուղու վրա, համանուն դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 178 հզ. (2010): Հիմնադրվել է 1530–ին: Կան XVIII դ–ի ճարտ. հուշարձաններ:

ՍԱՆ ՄԻԳԵԼ ԴԵ ԱԼԵՆԴԵ (San Miguel de Allende), ք. Մեքսիկայի Գուանախուատո նահանգ–ում՝ Լահայի գետահովտում: Բն.՝ 72 հզ. (2010): Հիմնադրվել է 1542–ին: Կան գաղութ. ժամանակների բարոկկո ոճի ճարտ. հուշարձաններ (եկեղեցիներ և մատուռներ՝ ճակատ. մասում հարուստ փորագրություններով)՝ Սան Միգելը (XVII դ.), Սանտա Կասա դե Լորիտոն (XVIII դ.), պալատներ և տներ (XVIII դ.): Քաղաքում է Գեղեցիկ արվ–ների դպրոցի շենքը (XX դ.)՝ Դ. *Միկկյորոսի* նկարազարդումներով: Զբոսաշրջության կենտրոն է:

ՍԱՆ ՊԱԲԼՈ (San Pablo), ք. Ֆիլիպիններում՝ Լուսոն կղզու հվ–ում: Բն.՝ 245,5 հզ. (2010): Առևտրի և գործար. ծառայությունների կենտրոն է: Զարգացած է կոկոս. ընկույզի վերամշակությունը:

ՍԱՆ ՊԱՈՒԼՈՒ (São Paulo), ք. Բրազիլիայի հվ–արլ–ում, համանուն նահանգ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 10,4 մլն, ագլոմերացիայում՝ Մեծ Ս. Պ–ում՝ 20,3 մլն (2010): Տրանսպորտ. հանգույց է: Ունի օդանավակայան, մետրո, բուհեր, թանգարաններ, թատրոններ: Բանկաֆին., առևտր., գիտ., մշակութ. կենտրոն է: Լատ. Ամերիկայի համակարգչ. և ծրագրավորման արտադրանքների թողարկման հիմն. կենտրոններից է: Գործում է սուրճի շուկա: Ս. Պ–ում է Կառ–յան պալատը (XVI դ.), կան երկնաքերներ (XX դ.): Հիմնադրվել է 1554–ին: 1822–ին Ս. Պ–ում է հռչակվել Բրազիլիայի անկախությունը:

Հայերը Ս. Պ–ում հաստատվել են XIX դ–ի վերջին: Համայնքն ստվարացել է Մեծ եղեռնից հետո և 1990–ական թթ–ի սկզբին: Ներկայում Ս. Պ–ում ապրում է շուրջ 25 հզ. հայ: Համայնքում գործում են վարժարան, եկեղեցի, հայրենակց. միություններ, Ս. Պ–ի համալսարանում՝ հայագիտ. ամբիոն, ևն:

ՍԱՆ ՊԵԴՐՈ ՍՈՒԼԱ (San Pedro Sula), ք. Հոնդուրասում, Կորտես դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 638,3 հզ., ագլոմերացիայում՝ 800 հզ. (2010): Զարգացած է սննդի, ծխախոտի, տեքստիլ, կահույքի և այլ արդ–յան ճյուղեր: Հիմնադրվել է 1536–ին:

ՍԱՆ ՌԵՄՈ (San Remo), ք. Իտալիայում՝ Լիգուրիա մարզում՝ Լիգուրիա ծովի ափին: Բն.՝ 66 հզ. (2010): Կլիմ. առողջավայր է: Գործում է ծաղիկների շուկա: Ս. Ռ–ում անցկացվում է իտալ. երգի ամենամյա միջազգ. փառատոնը: Տես նաև *Սան Ռեմոյի խորհրդաժողով 1920*:

ՍԱՆ ՌԵՄՈՅԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ 1920, Անտանտի պետությունների Գերագույն խորհրդի նիստը (ապրիլի 19–26) Սան Ռեմոյում (Իտալիա)՝ Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագծի մշակման և այլ հարցերով: Հայաստանի վերաբերյալ հարցերը քննարկելիս մասնակցել են *Դեղոս Նուբարը* և Ավետիս *Ահարոնյանը*: Ս. Ռ. խ. դիմել է ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնին՝ ընդունելու *Հայաստանի մանդատը* և միջնորդ լինելու նրա սահմանները որոշելիս: Պայմանագրի նախագիծը սուլթան. Թուրքիայի կառյունը չի ընդունել:

ՍԱՆ ՍԱԼՎԱԴՈՐ (San Salvador), *Սալվադորի* մայրաքաղաքը՝ Պանամերիկ. մայրուղու վրա: Բն.՝ 553,5 հզ., ագլոմերացիայում՝ 1,95 մլն (2010): Ունի օդանավակայան: Երկրի գլխ. տնտ. կենտրոնն է: Գործում են Սալվադորի, Պատմության ակադ–ները, թանգարաններ: Հիմնադրել են իսպանացիները 1525–ին: Կան գաղութ. ժամանակաշրջանի ճարտ. հուշարձաններ: Բազմիցս ավերվել է երկրաշարժերից (վերջինը՝ 1988–ին):

ՍԱՆ ՍԱՏԻՐՈ, ճարտ. հուշարձան Միլանում: Բաղկացած է մատուռից (868–881, 1482–ին Դ. *Բրամանտեն* քառաբսիդ ծավալը վերափոխել է գլանաձև, քառախորշ շենքի), զանգակատնից և եկեղեցուց (1478, ճարտ.՝ Դ. Բրամանտե): Մատուռի հատակագծ. և կառուցվածք. հորինվածքը Բագարանի Սբ Թեոդորոս եկեղեցու կրկնությունն է:

ՍԱՆ ՍԵԲԱՍՏԻԱՆ (San Sebastián), ք. Իսպանիայում՝ Բասկերի երկիր ԻՄ–ում, Գիպուսկոա պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 185 հզ. (2010): Նվինգստ՝ Բիսկայան ծոցի ափին: Ծովափնյա առողջավայր է: Անցկացվում են ավանդ. առագաստանավ. մրցումներ, միջազգ. փառատոներ: Զարգացած է զբոսաշրջությունը:

ՍԱՆ ՍՏԵՖԱՆՈՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 1878, նախն. պայմանագիր, որով ավարտվել է 1877–78–ի ռուս–թուրք. պատերազմը: Ստորագրվել է փետր. 19 (մարտի 3)–ին Սան Ստեֆանոյում (Կ. Պոլսի մոտ): Ս. Ս. պ–ով Չեռնոգորիան, Սերբիան, Ռումինիան անկախ են ճանաչվել, Բոսնիան, Հերցեգովինան ինքնավարություն են ստացել Օսմ. կայսրության շրջանակներում ևն: Ասիական մասում Ռուսաստանն ստացել է Արդահանը, Կարսը, Բաթումը, Բայազետը և մինչև Սողանլուղ ընկած տարածքը: 16–րդ հոդվածով նախատեսվում էր վարչ. բարենորոգումներ անցկացնել Արմ. Հայաստանում:

Քանի որ Ս. Ս. պ. ուժեղացնում էր Ռուսաստանի դիրքերը, այն անընդունելի էր եվրոպ. տերությունների համար և վերանայվել է 1878–ի *Բեռլինի վեհաժողովում*:

ՍԱՆ ՏԱՇ, լ–անցք Տյան Շանում՝ Իսիկ Կուլ լճից արլ.՝ Ղրղըզստանում: Բարձր.՝ 2195 *մ*: Լ–անցքով է անցնում Իսսիկ–Կուլն Ալմաթիին կապող ճանապարհը: Ս. Տ. են անվանում նաև լճից փչող ուժեղ քամին:

ՍԱՆ ՏՈՄԵ (São Tomé), Սան Տոմե և Պրինսիպի պետության մայրաքաղաքը համանուն կղզում: Բն.՝ 65,5 հզ. (2010): Նվինգստ՝ Ատլանտ. օվկ–ի ափին: Ունի օդանավակայան:

ՍԱՆ ՏՈՄԵ ԵՎ ՊՐԻՆՍԻՊԻ (São Tomé e Principe), **Սան Տոմե և Պրինսիպիի Հանրապետություն** (República Democrática de São Tomé e Prinsipe), պետություն Կենտր. Աֆրիկայում՝ Սան Տոմե և Պրինսիպիի կղզիներում: Տարածքը՝ 1 հզ. *կմ*^{2}, բն.՝ 212 հզ. (2009): Մայրաքաղաքը՝ *Սան Տոմե*: Պետ. լեզուն՝ պորտուգ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ ԱԺ–ն: Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է: Բաժանված է 2 վարչ. պրովինցիաների: Անդամակցում է ՄԱԿ–ին, Աֆրիկ. միությանը ևն: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 1,7 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է կակաո, կոպրա, սուրճ, կոկոսի յուղ, ձուկ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ դոբրա: XV դ–ից՝ պորտուգ. գաղութ: 1960–ից ազատագր. պայքարը գլխավորել է Ս. Տ–ի և Պ–ի Ազատագրության շարժումը: Անկախություն է ձեռք բերել 1975–ին: 1991–ին անցկացվել են առաջին ժողովրդավար. ընտրությունները բազմակուս. համակարգով:

ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՒ (São Francisco), գետ Բրազիլիայում: Երկ.՝ 2800 *կմ*, ավազանը՝

600 հզ. *կմ²*, գետաբերանում ջրի միջին ծախսը՝ 3300 *մ³/վ*: Թափվում է Ատլանտ. օվկ–ը: Սահանքավոր է, Պաուլու Աֆոնսու ջրվեժների վրա կա ջրէկ: Նավարկելի է Պիրոպորա–Ժուազեյրա ք–ների միջև:

ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈ (San Francisco), ծովախորշ, ծոց Խաղաղ օվկ–ում՝ ԱՄՆ–ի ափերին: Օվկ–ի հետ կապված է Ոսկե դարպաս նեղուցով: Երկ.՝ 88 *կմ*, լայն.՝ 20 *կմ*, խոր.՝ 2–19 *մ*: Արմ. ափին է Սան Ֆրանցիսկո, արլ–ին՝ Օքլենդ, Բերկլի, Ռիչմոնդ ք–ները:

ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈ, ք. ԱՄՆ–ում՝ Խաղաղ օվկ–ի ափին՝ Կալիֆոռնիա նահց–ում: Բն.՝ 817 հզ., ագլոմերացիայում՝ 4,5 մլն (2010): Ծով. նվ նգստ է: Ունի օդանավակայան, մետրո: Խոշոր առևտրաֆին. կենտրոն է: Զարգացած են կենսատեխնոլոգիան, կենսբ. հետազոտությունները, զբոսաշրջությունը (16 մլն զբոսաշրջիկ՝ 2017–ին), մեքենաշինությունը, սննդի, քիմ., նավթավերամշակման արդ–յան ճյուղերը: Կան բուհեր, արվ–ի թանգարան, Մ. Խ. դե Յունգի հուշաթանգարանը, Ասիայի արվ–ի և մշակույթի կենտրոնը: Գաղութ. ժամանակաշրջանի հուշարձաններից են Պարերի տունը, Միսսիս Դոլորես մենաստանի եկեղեցին (XVIII դ.): 1945–ին Ս. Ֆ–ում հիմնադրվել է ՄԱԿ–ը: Նշանավոր են Ս. Ֆ–ի 2 կախովի կամուրջները՝ Ս. Ֆ–Օքլենդ (երկ.՝ մոտ 13 *կմ*, 1936) և «Ոսկե դարպաս» (միջնամասի թռիչքի երկ.՝ 1280 *մ*, 1937):

Հայ համայնքը Ս. Ֆ–ում կազմավորվել է XIX դ–ի 80–90–ական թթ–ին, ստվարացել ԱՀՊ–ից հետո և 1990–ական թթ–ի սկզբներին: Համայնքում գործում են Ամերիկահայ առաջադիմ. միության, ՀԲԸՄ, ՀՕՄ տեղ. կազմ–յունները, «Թեքեյան», «Համազգային» միությունների մասնաճյուղերը, մշակութ., հայրենակց. միությունները, եկեղեց. մարմիններ ևն:

ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈՅԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ 1945, ՄԱԿ–ի հիմնադիր 50 պետությունների խորհրդաժողով (ապրիլի 25–հունիսի 26): Հրավիրվել է ԽՍՀՄ–ի, ԱՄՆ–ի, Մեծ Բրիտանիայի և Չինաստանի անունից՝ ի կատարումն Յալթայի խորհրդաժողովի (1945) որոշման՝ ՄԱԿ–ի կանոնադրության վերջն. տեքստը նախապատրաստելու համար:

ՍԱՆԱ, *Եմենի* մայրաքաղաքը: Բն.՝ 2 մլն–ից ավելի (2010): Արտադր., գիտամշակութ., արհեստագործության կենտրոն է, հայտնի է ոսկու, արծաթի, պղնձի արտադրանքներով: Ունի օդանավակայան, համալսարան: Հայտնի է I դ–ից: X դ–ից մինչև 1916–ը եղել է զեյդիտյան իմամների նստավայրը: 1916–1962–ին՝ Եմենի թագավորության, 1962–ից՝ Եմենի Արաբ. Հանրապետության մայրաքաղաքը: Կան պատմաճարտ. հուշարձաններ. ալ–Ջամա–ալ Քեբիր, ալ–Բակիլիջե (XVII դ.) մզկիթները, բաղնիքներ, կարավանատներ: Հին քաղաքը Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՍԱՆԱԳԱ (Sanaga), գետ Կամերունում: Երկ.՝ 918 *կմ*, ավազանը՝ 135 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը գետաբերանում՝ 2000 *մ³/վ*: Թափվում է Բիաֆրա ծոցը: Հիմն. վտակներն են Մբամը, Պորոժիստան: Նավարկելի է ստորին հոսանքում: Կա ջրէկ: Ափին է Էդեա ք–ը:

ՍԱՆԱԵՎ, Վսեվոլոդ Վասիլևիչ (1912–1996), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1969): Մոսկվայի Մոսսովետի անվ. թատրոնի և ՄԳԱԹ–ի դերասան: Նկարահանվել է կինոյում («Լավատեսական ողբերգություն», «Ձեր որդին և եղբայրը», «Ազատագրում», «Պեչկի–լավոչկի» ևն):

ՍԱՆԱՀԻՆԻ ԿԱՄՈՒՐՋ, ճարտ. հուշարձան Դերեդ գետի վրա՝ Ալավերդի ք–ի տարածքում: XII դ–ի վերջին կառուցել է Վանենի թագուհին: Միաթռիչք է (բացվածքը՝ 18,6 *մ*), եզրապատերի վրա առյուծների բարձրաքանդակներ են:

ՍԱՆԱՀԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Սանահինի բարձրագույն դպրոց: Հիմնադրվել է 966–ին *Աշոտ Գ Ողորմածի* կնոջ՝ Խոսրովանույշ թագուհու պատվերով: XI դ–ի 1–ին կեսին Ս. հ–ում գործել է *Գրիգոր Սյունեցու Պահլավունին*, որի օրոք բացվել են հռետոր., փիլ., երաժշտ., բժշկ. վարժարաններ, դասավանդվել «յոթ ազատ արվեստներ», տոմարագիտ–յուն ևն: XIV–XV դդ–ում Ս. հ–ում զարգացել է գրչությունը (35 ձեռագիր Մոնդ–ում է): Համալսարանին կից գործել է *Սանահինի մատենադարանը*: Ս. հ–ի բարունապետներ են եղել Անանիա, Դիսկորոս, Հակոբ Սանահնեցիները, Սիմեոնը, *Գրիգոր Տուտևորդին*, *Գրիգոր Որդի Աբասան*, *Վարդան Արևելցին*, հայտնի էին գրիչներ Մատթեոսը, Կարապետը, Խաչատուր և Ավետիք վրդ–ները, Ղազարը, Հովհաննեսը, թուղթ կոկող Ստեփանոսը և ուր.:

ՍԱՆԱՀԻՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ստեղծվել է Սանահինի համալսարանին կից՝ X դ–ում: Ս. մ–ի հին ու ընտիր ձեռագրերն օգտագործվել են ուսուցման նպատակով: Ինչպես հայկ. բազմաթիվ մտնդ–ները, այնպես էլ Ս. մ. կողոպտվել է: 1904–ին Սանահինի վանահայրը պահպանված բոլոր ձեռագրերը նվիրել է Էջմիածնի մտնդ–ին: Մեզ հասած ձեռագրերից 35–ը Մտնդ–ում են:

ՍԱՆԱՀԻՆԻ ՎԱՆՔ, ճարտ. համալիր Սանահինում (1967–ից՝ Ալավերդի ք–ի շրջագծում): Հիմնադրվել է 966–ին: Համալիրում են 3 եկեղեցի, 2 գավիթ, գրատուն, զանգակատուն, ճեմարան, դամբարան: Հնագույն եկեղեցին Սբ Աստվածածինն է (928–944): Գլխ.՝ Սբ Ամենափրկիչ եկեղեցին (957–966) երկհարկ ավանդատներով, խոշոր գավթով, արլ. ճակատին՝ կտիտոր. խորաքանդակով շինություն է: Սբ Գրիգոր եկեղեցին (1061) քառախորան է՝ 8 զույգ կիսասյուներին հենվող դեկորատիվ կամարաշարով: Ներկայի գմբեթը վերակառուցել է *Սարգիս Ուստան* 1652–ին: Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է (2001):

ՍԱՆԱՀՅԱՆ Օլգա Հարությունի (1920–2013), արձակագիր, թարգմանիչ: Հեղինակ է «Անուշիկի արկածները» (1956), «Միամիտ արջուկը» (1968), «Հեքիաթներ և պատմվածքներ» (1979), «Փիսիկները հաղթեցին» (1990), «Մանչուկը և Կաղլոնը Երևանում» (1995) մանկ. պատմվածքների և վիպակների, «Հոգու տարածք» (2006) պատմվածքների, հրապարակախոս. հոդվածների և այլ ժող–ների: Թարգմանել է Պ. Բաժովի, Մ. Զոշչենկոյի, Շոլոմ–Ալեյխեմի, Ա. Լինդգրենի գործերից:

ՍԱՆԱՄՅԱՆ Գևորգ Մինասի (1904–1976), կինոօպերատոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1963): 1933–36–ին՝ Մոսկվայի Սոյուզկինոխրոնիկայի, 1936–ից՝ Հայֆիլմի օպերատոր («Հայաստանի պղինձը», 1937, «Եղիշե Չարենց», 1957, «Հովհաննես Թումանյան», 1969, բոլորը՝ վավերագր., «Կրակը անտառում», 1941, գեղ. ֆիլմ): Ս–ի նկարահանած (1942–44) ռազմաճակատային դրվագներն օգտագործվել են «Մեծ հայրենականը» (1979, Մոսկվա) ֆիլմում:

ՍԱՆԱՅ Աբու–լ–Մաջդ Մաջդուդ իբն Ադամ (1070–մոտ 1140), պարսիկ բանաստեղծ: Կրոնասուսուցող. պոեմի ժանրի սկզբնավորողը: Հեղինակ է «Ճշմարտությունների այգին», «Ստրուկների ուղևորությունը դեպի վերադարձի վայր» պոեմների, նաև ներբողների և հեդոնիստ. գործերի:

ՍԱՆ–ԱՆՏՈՆԻՈ (San–Antonio, Ֆրեդերիկ Շառլ Անտուան Դար, 1921–2000), ֆրանսիացի գրող: Հեղինակ է «Անախորժություններն գլխին թափվեցին» (1955), «Մի շտապեք խարակիրի անել» (1962), «Ի վերջո դա խողովակ է» (1999) դեղեկտիվ վեպերի:

ՍԱՆԱՍԱՐՅԱՆ Մկրտիչ Սարգսի (1818–1889), մեծահարուստ, բարերար: Ս–ի միջոցներով կառուցվել է Կարինի (Էրզրում) *Սանասարյան վարժարանը*, 1884–ին վերաշինվել Վանի *Սանդուխտյան–Սարիամյան* վարժարանը ևն: Աջակցել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանին:

ՍԱՆԱՍԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ, հիմնադրվել է 1881–ին Կարինում՝ Մկրտիչ *Սանասարյանի* միջոցներով և Կարապետ *Եզյանի* ջանքերով: Ուսման տևողությունը՝ 9 տարի: Ունեցել է գիշերօթիկ բաժին: 1906–ին վարժարանին կից հիմնադրվել է ուսուցչանոց (2 տարվա ծրագրով): 1912–ին տեղափոխվել է Սեբաստիա: Ունեցել է ուս., մանկավարժ., արհեստագիտ. բաժիններ, լարորատոր սարքավորումներ, գրադարան (պահվել է 94 ձեռագիր), թանգարան, հիվանդանոց ևն: 1915–ին ուսուցիչների մեծ մասը նահատակվել է, իսկ վարժարանը՝ ավերվել:

ՍԱՆԱՍՈՒՆ, Սասուն, Դավթի բերդ, Քաղքիկ, բերդ Աղձնիք նհգ–ի *Սասուն* գավ–ում՝ Ծովասարի հվ. ստորոտի ապառաժոտ բլրի գագաթին: 20–25 *մ* բարձրյան բերդապարիսպները եռանկյունաձև ձգվում են բլրի գագաթի շուրջը: XIII–XIV դդ–ում բերդը գրավել և ավերել են մոնղ., այնուհետև՝ օսմ. նվաճողները:

ՍԱՆԱՍՏՐՈՒԿ (ծ. թ. անհտ–մոտ 110), Հայոց թագավոր՝ 75–ից՝ *Արշակունիների* արքայատոհմից: Հաջորդել է *Տրդատ Ա*–ին: Հայաստանին է միացրել Օսրոյենեն՝ Եդեսիա կենտրոնով: Հիմնել է Մծուրն ք., նպաստել առևտրի, արհեստների զարգացմանը: Մի վկայաբանության մեջ ներկայացվում է իբրև իր Սանդուխտ դստեր և Թադեոս առաքյալին սպանող:

ՍԱՆԱՑԻԱ (լատ.՝ Sanatio – բուժում, առողջացում), 1. (բժշկ.) օրգանիզմի առողջացմանը նպատակաուղղված բուժկանխարգելիչ միջոցառումներ: 2. (Տնտ.) միջոցառումների համակարգ (սուբսիդիաներ, արտոնյալ վարկեր, արտոնյալ հարկում, լրիվ կամ մասնակի ազգայնացում ևն), որոնք իրականացվում են ձեռն–ների սնանկացման կանխման կամ մրցունակության բարձրացման համար:

ՍԱՆԳԱ (Sangha, Sanga), գետ Կենտր. Աֆրիկ. Հանրապետությունում և Կոնգոյի Հանրապետությունում: Կոնգո գետի աջ վտակը: Կազմավորվում է Կադեի և Սամբերե գետերի միախառնումով: Երկ. միախառնման տեղից՝ մոտ 790 *կմ*, ավազանը՝ 200 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը Վեսոյի մոտ՝ 700–4250 *մ³/վ*: Նավարկելի է:

ՍԱՆԳԱԼԼՈ (Sangallo), Վերածննդի շրջանի իտալացի ճարտ–ների և քանդ–ների ընտանիք: **Ջուլիանո Ս.** (մոտ 1445–1516), կառուցել է պարզ հորինվածքով նրբագեղ առանձնատներ (Պոջո ա Կայանո, 1485), կենտրոնագմբեթ տաճարներ (Սանտա

Մարիա դելլե Կարչերի եկեղեցին Պրատոյում, 1484–95) ևն: Եղբայրը՝ **Անտոնիո Ավագ Ս.** (մոտ 1460–1534), դաս. ձևերով զարգացրել է կենտրոնագմբեթ տաճարի տիպը (Սան Բիյաջո եկեղեցին, Տոսկանա, 1518–45): Որդին՝ **Անտոնիո Կրտսեր Ս.** (1484–1546), կառուցել է պալատներ (Սակետտիի պալատը Հռոմում, 1543): 1520–ից (*Ռաֆայելի* մահից հետո) ղեկավարել է Հռոմի Սբ Պետրոս տաճարի շին–յունը:

ՍԱՆԳԵԼԻ (Sangeli) Անդրեյ (ծ. 1944), Մոլդովայի վարչապետ՝ 1992–96–ին: 1989–90–ին՝ Մոլդովայի վարչապետի 1–ին տեղակալ:

ՍԱՆԳՎԻՆԻԿ (լատ.՝ sanguis, սեռ. հոլ.՝ sanguinis – արյուն, կենս. ուժ), ըստ Հիպոկրատի դասակարգման՝ 4 հոգեկան խառնվածքներից մեկի անվանումը. բնորոշվում է աշխուժությամբ, դյուրագրգռությամբ և հույզերի դյուրափոփոխությամբ:

ՍԱՆԴ (Sand) Ժորժ (Դյուպեն Ավրորա, 1804–1876), ֆրանսիացի կին գրող: Հեղինակ է «Ինդիանա» (հ. 1–2, 1832, հայ.՝ 1990), «Վալանթին» (1832, հայ.՝ 1930), «Լելիա» (1833), «Ժաք» (1834), «Կոնսուելո» (հ. 1–8, 1842–43) և այլ վեպերի, «Իմ կյանքի պատմությունը» (1854–55) հուշագրության: Հայ. հրատարակվել են նաև «Օրիորդ Լագենթինի» (1871), «Ֆլավի» (1875), «Լեոն Լեոնի» (1875), «Բաժակ» (1877) և այլ գործեր:

ՍԱՆԴ, ձավար ծեծելու (հացահատիկը թեփազրկելու), անցյալում նաև աղ ու որոշ ներկատու ծառերի փայտը մանրելու գործիք: Նոր քարի դարի ժամանակաշրջանից հղկված Ս–եր են հայտնաբերվել Հայաստանի հնավայրերից (Շենգավիթ, Կղզյակ բլուր, Մաշտոցի բլուր ևն): Ձավարի գործարան. արտադր–յան սկսվելուց հետո Ս. հազվադեպ է գործածվում:

ՍԱՆԴԱԼ (Պետրոսյան Ալեքսանդր Պողոսի, 1859–1922), գյուղագիր, մանկավարժ: 1880–ական թթ–ին դասավանդել է Մուշի Առաքելոց վանքում, Գանձակում, Բաքվում, Միջին Ասիայում և այլուր: Հեղինակ է «Վիշապ» (1884) գրքի, «Փոքրիկ աստղը» (1892) վեպի:

ՍԱՆԴԱԽՉԻԵՎ Լև Ստեփանի (1937–2006), կենսաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1975), պրոֆ. (1981): ՌԳԱ ակադ. (1992, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1981–ից): Աշակել է մոլ. կենսբ–յան և գենետիկ. ճարտարագիտ–յան հետազոտման մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս ստանալու բուժկանխարգելիչ և ախտորոշիչ նոր պատրաստուկներ: Կազմակերպել է ռեկոմբինանտ ինտերֆերոնի առաջին արտադր–յունը ՌԴ–ում, ստեղծել լայն անվանակարգով ախտորոշիչ թեստ–համակարգերի թողարկման արտադր–յան հենակետ: Կազմակերպել է կենտրոնում մշակված հակավիրուս. ռիդոստին պատրաստուկի, լյարդաբորբ A–ի և կարմրուկի ապաակտիվացրած վակցինաների արտադր–յուն: ԽՍՀՄ Պետ. (1985), ՌԴ Կառ–յան (2000) մրց–ներ:

ՍԱՆԴԵՌԼԵՆԴ (Sunderland), ք. Անգլիա–յում: Բն.՝ 170, 5 հզ. (2010): Նվինգստ՝ Հս. ծովի ափին՝ Ուիրի գետաբերանում:

ՍԱՆԴԵՐՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ, գերմ. զինվ. առաքելություն Թուրքիայում ԱՀՊ–ի նախօրեին՝ գեն. Օտտո ֆոն Սանդերսի գլխավորությամբ: Անդամները պատասխանատվություն են կրում օսմ. իշխանությունների կազմակերպած Հայոց ցեղասպանության համար. ոչ միայն մասնակցել են թուրք. բանակի ռազմ. գործողությունների ծրագրերի մշակմանը, այլև երիտթուրքերին հուշել են հայերին հայրենի հողից անապատները քշելու միտքը:

ՍԱՆԴԵՐՔ, սանտերք, տնային պայմաններում բուրդ կամ բամբակ զզելու գործիք: Հայաստանում օգտագործվել է հնագույն ժամանակներից:

«ՍԱՆԴԻ ԹԱՅՄՍ» (“The Sunday Times” – «Կիրակնօրյա ժամանակ»), հաս–քաղ. թերթ (1864–ից, Լոնդոն՝ անգլ.): 1821–ին հիմնադրված «Նյու Օբսերվեր» պարբ–ի շարունակությունն է:

ՍԱՆԴԻՆՈ (Sandino) Աուգուստո Սեսար (1895–1934), Նիկարագուայի Ազգ. հերոս, գեն. (1926): 1926–ից գլխավորել է ԱՄՆ–ի զորքերի դեմ (1912–ին զավթել էին Նիկարագուան) պայքարը՝ ազատագրելով (1933) երկիրը: Սպանվել է:

ՍԱՆԴԼԵՐ (Sandler) Ռիկարդ (1884–1964), Շվեդիայի վարչապետ՝ 1925–26–ին: Երկրի Ս–դ. բանվ. կուս–յան առաջնորդներից: 1932–39–ին՝ ԱԳ նախարար:

ՍԱՆԴԽԱՍԱՐ, լ–գագաթ Վարդենիսի լ–շղթայի արլ–ում՝ ՀՀ Գեղարքունիքի և Վայոց ձոր մարզերի սահմանին: Բարձր.՝ 3451 մ: Լանդշաֆտը մարգագետնային է:

«ՍԱՆԴՂԿԱՎԱՆՔԻ ԱՎԵՏԱՐԱՆ», ձեռագիր մատյան (Մտնդ., ձեռ. № 3793): 1053–ին Արշարունիքի Սանդղկավանքում ընդօրինակել և ծաղկել է Հովհաննես Սանդղկավանեցին: Պահպանվել են 4 ավետարանիչի, անվանաթերթերի և 2 խորանի պատկերները: Ձեռագիրն աչքի է ընկնում ձևի նորամուծություններով, պատկերները՝ նուրբ, լուսավոր կոլորիտով:

ՍԱՆԴՀՅԱՆ Էդվարդ Մարտինի (ծ. 1961), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (2008), պրոֆ. (2008): 1998–99–ին՝ ՀՀ ֆին. և էկոնոմիկայի նախարար, 2012–ից՝ Հայ–ռուս. (Սլավոն.) համալսարանի տնտեսագիտ–յան և բիզնեսի ինստ–ի տնօրեն, Բիզնես դպրոցի ղեկ.: Աշխ–ները վերաբերում են ֆին. համակարգի, բանկ. կարգավորման, կապիտալի շուկաների, բրոքերային ու դիլերային ընկ–ների զարգացման հարցերին: ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2014):

ՍԱՆԴՈՒԽՏՅԱՆ–ՄԱՐԻԱՄՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ, բարձր կարգի իգական դպրոց: Հիմնադրվել է 1870–ին Վանում՝ Գարեգին *Սրվանձտյանի* ջանքերով և Մկրտիչ *Սանասարյանի* ու Սանդուխտյան ընկ–յան միջոցներով: 1884–ին Մ. Սանասարյանը կառուցել է նոր շենք և մոր հիշատակին վարժարանը կոչել նաև Մարիամյան: 1902–ին վարժարանին կից բացվել է իգական որբանոց: Գործել է մինչև 1915–ը:

ՍԱՆԵԵՎ Վիկտոր Դանիլովիչ (ծ. 1945), ռուս. աթլետ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1968): Օլիմպ. խաղերի եռակի (1968, 1972, 1976) չեմպիոն, արծաթե մեդալակիր (1980), Եվրոպայի կրկնակի (1966, 1974) և ԽՍՀՄ բազմակի (1968–78) չեմպիոն՝ եռացատկում:

ՍԱՆԹԱԼՆԵՐ, մունդա խմբի ժողդ. հարբ. Հաղկաստանում (Բիհար և Արմ. Բենգալիա, 6,5 մլն, 2001): Ապրում են նաև Բանգլադեշում (600 հզ.), Նեպալում (65 հզ.) և Բութանում (20 հզ.): Լեզուն՝ սանթալի: Պահպանել են ավանդ. հավատալիքները, որոշ մասը հինդուս է:

ՍԱՆԹՈՅԱՆ Մելս Գևորգի (ծ. 1938), գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (2003): Հեղինակ է «Չարենցը և գրական սխեմատիզմը» (1997), «Տաղի մոգերից մեկը» (2000), «Հ. Թումանյան: Պոետիկայի հարցեր» (համահեղ., 2002) աշխ–ների, «Սերունդի հոգևոր հացը» (2003) հուշագրության:

ՍԱՆԹՐՅԱՆ Վանիկ (Վանյա) Ալեքսանի (1935–2017), արձակագիր, լրագրող: ՀՀ վաստ. լրագրող (2006): Հեղինակ է «Լեգենդը կոչվում է Կամո» (1982) վիպակի, «Մաշտոցի որդիները» (1985), «Աստ Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Մեծի» (1999) էսսեների, «Դեպի Արցախ. պատերազմի և խաղաղության ճամփաներին» (2000), «Վարք երեք սրբերի» (2002), «Լեգենդ չինարների մասին» (2007), «Ձեր ընծայագրերի հետքերով. ինքնալրագիտարան» (հ. 1–2, 2011–12), «Երեք էտյուդ» (2013) պատմվածքների, էսսեների, ակնարկների ժող–ների:

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ Արմեն Պարույրի (ծ. 1947), դերասան: ՀՀ ժող. արտիստ (2004): Պրոֆ. (2013): Պարույր *Սանթրոսյանի* որդին: 1967–ից՝ ԵՊՀԹ և «Նորք» թատրոնների դերասան (Վալերկա՝ Գ. Մամլինի «Հե՛յ, քեզ հետ եմ, բարև», Լեոնատո՝ Վ. Շեքսպիրի «Ոչնչից մեծ աղմուկ», Քաղաքապետ՝ Մ. Ե. Սալտիկով–Շչեդրինի «Մի քաղաքի պատմություն», ևն): Խաղացել է ռադիո– և հեռուստաբեմադրություններում («Մամփրե արքան»՝ ըստ Մ. Գալշոյանի», ևն), նկարահանվել է կինոյում («Տերը», 1983, «Կարոտ», 1990, երկուսն էլ՝ Հայֆիլմ, ևն):

ՀՀ ՄՆ, ՀԹԳՄ (երկուսն էլ՝ 2007) մեդալներ:

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ Մուշեղ Հայրապետի (1894–1972), մանկավարժ: Մանկավարժ. գիտ. դ–ր (1948), պրոֆ. (1937): ԽՍՀՄ ՄԳԱ թղթ. անդամ (1957): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1945): 1931–32–ին՝ ՀԽՍՀ լուսժողկոմի տեղակալ: Հեղինակ է հայ մանկավարժության և դպրոցի պատմությանը նվիրված աշխ–ների:

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ Պարույր Հովհաննեսի (1911–1976), դերասան: ՀԽՍՀ ժող. արտիստ (1956): Արմեն *Սանթրոսյանի* հայրը: 1930–ից՝ ԵՊՀԹ հիմնադիր–դերասաններից: Ս–ի դերակատարումներն աչքի են ընկել գունագեղությամբ և ինքնատիպությամբ (Բարոն՝ Ա. Ս. Պուշկինի «Ժլատ ասպետը», Բեսսեմենով՝ Մ. Գորկու «Քաղքենիներ», Բազազ Արտեմ՝ «Գիքոր»՝ ըստ Հ. Թումանյանի, Մոնտանելի՝ «Բողոք»՝ ըստ Է. Վոյնիչի, ևն): Նկարահանվել է կինոյում («Չախ–չախ թագավորը», 1969, «Վերադարձ», 1972, երկուսն էլ՝ Հայֆիլմ):

ՍԱՆԹՈՒՐ, բազմալար հարված. երաժշտ. գործիք: Նման է *ցիմբալին*: Տարածված է Այսրկովկասում և Մերձ. Արևելքում: Նվագում են ծնկներին կամ հատուկ հենարանին դրած, մետաղե կամ փայտե մուրճիկներով: Գործածվում է հիմնականում նվագակցելու համար, քաղաք. սազանդար. և աշուղ. խմբերում:

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ, միջազգ. բժշկասան. կանոններ, միջազգ. համաձայնագրեր, որոնք կարգավորում են մի շարք հատուկ վտանգավոր հիվանդությունների դեմ կատարվող սանիտարակարանտին. միջոցառումները: Տես նաև *կարանտինային հիվանդություններ*:

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՎԻՃԱԿ բնակչության, ցուցանիշների համալիր, որոնք բնորոշում են բնակչության առող. վիճակը, ծնելիությունը, մահացությունը, մանկ. մահացությունը, կյանքի տևողությունը, հիվանդացությունը և նրա կառուցվածքը, հաշմանդամությունը, ֆիզ. զարգացման մակարդակը:

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՐԱՆՏԻՆԱՅԻՆ ԿԵՏԵՐ, հիգիենիկ և հակահամաճարակ. կայանների ստորաբաժանումներ, որոնք տեղադրված են սահման. բաց օդանավակայաններում, ծով. և գետ. նվինգստ-ներում, սահմանամերձ երկթղ. կայարաններում ևն, սահմանված սանիտարակարանտին. վիճակը վերահսկելու համար:

ՍԱՆԻՏԱՐԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐ, տարածքներ արդ. ձեռն-ների և բնակելի ու հաս. շենքերի միջև՝ բնակչությանն իրենց արտադր. վնասակար գործոնների ազդեցությունից պաշտպանելու համար:

ՍԱՆԿՏ ԳԱԼԼԵՆ (Sankt Gallen), ք. Շվեյցարիայում, համանուն կանտոնի վարչ. կենտրոնը: Բն.՝ 73 հզ. (2010): Կան պատմ. և ազգագր. թանգարաններ: Հուշարձաններից հայտնի է Սանկտ Գալլեն վան. համալիրը (հիմն.՝ VIII դ.), պահպանվել են X–XVIII դդ-ի շինություններ: Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՍԱՆԿՏ ՄՈՐԻՑ (Sankt Moritz), ջերմուկարուժ. և լ-կլիմ. առողջավայր, ձմեռ. սպորտի կենտրոն Շվեյցարիայում՝ Ռետյան Ալպերում: Ս. Մ-ում են անցկացվել II (1928) և V (1948) ձմեռ. օլիմպ. խաղերը:

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Պետերբուրգ (1914–21-ին՝ Պետրոգրադ, 1921–94-ին՝ Լենինգրադ), ք. ՌԴ-ում: Դաշն. նշանակության քաղաք է (ՌԴ սուբյեկտ՝ 1993-ից): Լենինգրադի մարզի վարչ., Հս-արմ. դաշն. օկրուգի կենտրոնը՝ Բալթիկ ծովի Ֆինն. ծոցի ափին՝ Նևա գետի թափման տեղում: Ս. Պ-ի կազմում են Զելենովոդսկ, Կոլպինո, Կրասնոյե Սելո, Կրոնշտադ, Լոմոնոսով, Պավլովսկ, Պետերհոֆ, Պուշկին, Սեստրորեցկ ք-ները: Բն.՝ 4581,9 հզ. (2009): Կարևոր տնտ., գիտ. և մշակութ. կենտրոն է, ծով. և գետ. նվինգստ: Հիմն. օդանավակայանը՝ Պուլկովո: Գործում է մետրո: Մեքենաշինության, սև ու գունավոր մետաղագործության, քիմ., թեթև, սննդի (գարեջրի խոշոր արտադր-յուն), պոլիգրաֆ արդ-յան խոշոր կենտրոն է: Ս. Պ-ում են ՌԳԱ գիտ. կենտրոնը, բազմաթիվ ԳՀԻ-ներ, բուհեր, թատրոններ, խոշոր գրադարաններ, թանգարաններ (այդ թվում՝ Էրմիտաժը) ևն:

Հիմնադրել է Պետրոս I-ը 1703-ին: 1712–28-ին և 1732–1918-ին՝ Ռուսաստանի մայրաքաղաքը: Ս. Պ-ում տեղի են ունեցել կարևոր իրադարձություններ՝ 1905–1907-ի, 1917-ի Փետր. և Հոկտ. հեղ-յունները: ՀՄՊ-ի տարիներին շրջափակման մեջ 900 օր դիմակայել է գերմ. հարձակումներին: 1945-ին Ս. Պ-ին շնորհվել է հերոս քաղաք կոչումը:

Ս. Պ-ում են XVIII–XIX դդ-ի ճարտ. համալիրներ՝ Պետրովավլովյան ամրոցը, Ալեքսանդր Նևսկի մայրավանքը, Սմոլնին, Վասիլևյան կղզու ցուցասլաքը՝ Բորսայի շենքով, Դվորցովայա հրապարակը՝ Ձմեռ. պալատով, Ալեքսանդրյան սյունով, գլխ. շտաբի կամարով, Դեկաբրիստների հրապարակը՝ Պետրոս I-ի հուշարձանով («Պղնձե հեծյալ», 1782), Իսակիևյան տաճարով, Նևսկի պողոտայի համալիրը՝ Կազանյան տաճար, Ճարտարապետ Ռոսսիի փողոցը, Օստրովսկու հրապարակը՝ Ռուս. ակադեմ. դրամատիկ. թատրոնի և Ռուս. ազգ. բանկի շենքերով, Արվ-ի հրապարակը՝ Ռուս. թանգարանի շենքով, Մարսյան դաշտը, Ամառ. այգին և Ճարտարագիտ. ամրոցը:

Դաս. և ամպիր ոճերի հուշարձաններից են Գեղարվ-ի ակադ-ը (1764–88, ճարտ-ներ՝ Ա. Ֆ. Կոկորինով, Ժ. Բ. Մ. Վալլեն-Դելամուտ), Ծովակալության (1806–23, ճարտ.՝ Ա. Դ. Զախարով), Լեռն. ինստ-ի (1806–11, ճարտ.՝ Ա. Ն. Վորոնիխին) շենքերը, Նարվյան դարպասը (1827–34, ճարտ.՝ Վ. Պ. Ստասով), կամուրջներ: 1960-ին կառուցվել է Պիսկարևյան գերեզմանատան հուշահամալիրը: Քաղաքի պատմ. կենտրոնը Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է: Պետերհոֆում, Պուշկինում (Յարսկոյե Սելո), Պավլովսկում, Լոմոնոսովում կան XVIII–XIX դդ-ի պալատապուրակ. համալիրներ:

Հայերը Ս. Պ-ում բնակություն են հաստատել քաղաքի հիմնադրումից անմիջապես հետո. 1710-ին հիմնել են միություն: Եղել են վաճառականներ, արդյունաբերողներ, պետ. պաշտոնյաներ և փոքր թվով ազնվականներ, հիմնել են առևտր. գրասենյակներ, գործարաններ ու ֆաբրիկաներ, կառուցել Սբ Կատարինե (1771–1776), Սբ Հարություն (1797) եկեղեցիները: Այստեղ է բացվել 1-ին հայկ. տպարանը Ռուսաստանում (1781, Գ. Խալդարյան): Գործում են «Պետերբուրգի հայեր», «Նոր սերունդ» հայկ. կազմ-յունները, պարի խմբակներ, հայկ. թեքումով դպրոց ևն: Լույս են տեսնում «Հավատամք» ամսաթերթը, «Պետերբուրգի հայերի լրաբեր» աննախ թերթն ու էլեկտրոն. պարբ-ը: Ս. Պ-ում ապրում է շուրջ 20 հզ. հայ (2010):

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ, ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ Ի. Ե. Ռեպինի անվան: Հիմնադրվել է 1764-ին՝ որպես դաստիարակչ. հաստատություն՝ Ս. Պետերբուրգի գեղ. ակադ-ին առընթեր (1840-ից՝ Բարձրագույն գեղ. ուսումնարան Կայսեր. գեղ. ակադ-ին առընթեր): 1918-ին վերակազմավորվել է Պետրոգրադի ազատ գեղ. ուս. պետ. արվեստանոցի, 1922-ից՝ Բարձրագույն գեղ-տեխ. ինստ-ի: 1930-ից՝ Պրոլետար. կերպարվ-ի ինստ., 1932–97-ին՝ Լենինգրադի գեղանկարչության, քանդ-յան և ճարտ-յան ինստ.:

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ, Ռուսաստանի բարձրագույն գիտ. հաստատությունը մինչև 1917-ը: Հիմնադրվել է 1724-ին *Պետրոս I-ի* նախաձեռնությամբ (մինչև 1747-ը՝ Գիտ-յունների և գեղարվ-ի կայսեր. ակադ., 1803-ից՝ Կայսեր. ԳԱ, 1836-ից՝ Ս. Պետերբուրգի կայսեր. ԳԱ): Ունեցել է 3 բաժանմունք, ներառել է նաև Ակադեմ. համալսարանը (մինչև 1766-ը) և գիմնազիան (մինչև 1805-ը), ֆիզիկայի կաբինետը (1725-ից), աշխարհագրության դեպարտամենտը (1739-ից), քիմ. (1748-ից) և այլ լաբորատորիաներ, Պուլկովոյի աստղադիտարանը (1839-ից): Տպագրել է գիտ. և գեղ. գրկ. (1726–1915-ին՝ շուրջ 3 հզ. անուն), ԳԱ հանդեսներ: XVIII դ-ի կեսերից շնորհել է մրց-ներ: Նախագահին նշանակել է կայսրը: 1917-ի մայիսից՝ *Ռուսաստանի գիտությունների ակադեմիա*: Առաջին ընտրված նախագահը Ա. Պ. *Կարպինսկին* էր:

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սկզբնավորվել է 1781-ին, երբ Լոնդոնից Գրիգոր *Խալդարյանի* բերած հայկ. տպատառերով լույս է ընծայվել Ռուսաստանում 1-ին հայ. գիրքը՝ «Տետրակ այբբենական»-ը: Մինչև 1789-ը տպարանը հրատարակել է շուրջ 15 անուն գիրք, այնուհետև անցել է Սբ Էջմիածնի տնօրինությանը, և Հովսեփ *Արղությանն* այն տեղափոխել է Նոր Նախիջևան, հետո՝ Աստրախան:

1810-ին Հովսեփ *Հովհաննիսյանը* հիմնադրել է նոր տպարան (գործել է մինչև 1827-ը), 1828-ին Լազարյան ճեմարանը Ս. Պետերբուրգում բացել է իր տպարանը, 1838-ից գործել է Ալեքսանդր *Խուդաբաշյանի*, 1860-ական թթ-ին՝ Ռափայել *Պապկանյանի* տպարանները, 1867–72-ին՝ Միքայել *Միանասարյանցի* հայկ. հրտչ-յունը, 1890–1900-ական թթ-ին՝ «Պուշկինյան» հայկ. տպարանը: XIX դ-ի 2-րդ կեսին և հետո Ս. Պետերբուրգում հայ. գրքերը հրատարակվել են Կայսեր. գիտ-յունների ակադ-ի, Օ. Բակստի, Հ. Յանսոնի, Ի. Սկորոխոդովի, Յ. Լիբերմանի, Ա. Ա. Կրաևսկու, «Տրուդ», «Բեսել և ընկ.» երաժշտ., Բորպանովսկու և այլ տպարաններում: 1972-ին Լենինգրադում տպագրվել է «Հայ միջնադարյան քնարերգություն» անթոլոգիան, 1981-ին՝ Կոստանդին Երզնկացու «Լոյսն առաւօտուն» տաղերի ժող-ը, ԵՊՀ-ի, Մ. Աբեղյանի անվ. գրկ-յան ինստ-ի և Ռուս գրկ-յան ինստ-ի (Պուշկինյան տուն) համագործակցությամբ լույս է ընծայվել «Հայ և ռուս միջնադարյան գրականություն» (h. 1, 2, 1982, 1986) ժող-ը:

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀՈԳԵՎՈՐ ԱԿԱԴԵՄԻԱ, ՌՈՒԵ բարձրագույն ուս. հաստատություն: Հիմնադրվել է 1797-ին՝ որպես Ալեքսանդր Նևսկու ակադ.: 1809-ից՝ Ս. Պ. հ. ա.: 1918-ին փակվել է, վերաբացվել է 1946-ին: Պատրաստում է եկեղեցու սպասավորներ, աստվածաբաններ:

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ՌԴ խոշորագույն բուհերից և գիտ. կենտրոններից: Հիմնադրվել է 1724-ին ԳԱ-ի հետ՝ *Պետրոս I*-ի հրամանագրով: 2016-ին ուներ շուրջ 30 հզ. ուսանող: Լենինի (1944), ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (1969) շքանշաններ:

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՊԵՏԱԿԱՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ստեղծվել է 1990-ին՝ Մ. Ի. Կալինինի անվ. պոլիտեխ. ինստ-ի (հիմն.՝ 1899) հիմքի վրա: 2010-ից՝ Ազգ. ԳՀ համալսարան: 2016-ին ուներ շուրջ 30 հզ. ուսանող:

ՍԱՆԿՏԻ ՍՊԻՐԻՏՈՒՍ (Sancti Spiritus), ք. Կուբայում, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 114, 4 հզ. (2010): Կան սննդի, ծխախոտի, տեքստիլ արդ-յան ձեռն-ներ, թանգարան, XVI–XVIII դդ-ի ճարտ. հուշարձաններ: Հիմնադրվել է 1514-ին:

ՍԱՆԿՑԻԱ (< լատ. sanction – խիստ որոշում), 1. ներգործության ձև. սոցիալ. վերահսկողության միջոց է: Տարբերում են բացաս. (կամ նեգատիվ, նորմերի խախտման և անցանկալի շեղումների ճնշումը) և դրական (կամ պոզիտիվ, ընդունած նորմերի և ցանկալի շեղումներին աջակցումը) Ս-ներ: 2. Պետ. ներգործության միջոց՝ սահմանված նորմերի և կանոնների խախտողի նկատմամբ: 3. Իրավ. նորմի մաս. բովանդակում է պետ. ներգործության հնարավոր եղանակներն ու միջոցները: 4. Միջազգ. իրավունքում՝ միջոցառում՝ միջազգ. պարտավորություններ կամ իրավունքի նորմ խախտած պետության նկատմամբ: 5. Հանցագործության կատարման մեջ կասկածվողի նկատմամբ հարկադրանք կիրառելու թույլտվության մասին դատա-

խազի ակտը: 6. Բարձր ատյանի՝ ինչ-որ բանի հաստատումը, թույլտվությունը:

ՍԱՆԿՈՒՐՈ, գետ Կոնգոյի ԺՀ-ում, Կոնգո գետի աջ վտակը: Երկ.՝ 1200 *կմ*, ավազանը՝ 156 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ մոտ 1700 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է գետաբերանից մոտ 500 *կմ*: Գետի վրա կա ջրէկ:

ՍԱՆՃՅԱՆ Ավետիս Գրիգորի (1921–1995), բանասեր, հայագետ: Պատմ. գիտ. դ-ր (1956), պրոֆ. (1965): 1982-ից՝ «Ջըռնըլ օֆ դը Սըսայթի ֆոր Արմինիըն Սթադիս» (անգլ.) պարբ-ի խմբ.: Հեղինակ է «Ալեքսանդրէթի սանջակի խնդիրը եւ ֆրանսթուրք-սիրիական յարաբերութիւնները» (1956), «Պատմական Սիրիայի հայկական գաղութները օսմանեան տիրապետութեան տակ» (1965), «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, 1301–1480 թթ.» (1969), «Յուցակ Ամերիկայի Միացեալ Նահանգներում միջնադարեան հայերէն ձեռագրերի» (1976) և այլ աշխ-ների: Կազմել և հրատարակել է Վահան Թեքեյանի «Նամականին» (1983):

ՍԱՆՃՅԱՆ Արա Կարապետի (ծ. 1968), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1996): 2006-ից՝ Միչիգանի համալսարանի Հայագիտ. հետազոտությունների կենտրոնի (Դիրբորն) վարիչ: Հեղինակ է Հայաստանի, Մերձ. Արևելքի հայկ. գաղթավայրերի, Թուրքիայի և Արմ. Ասիայի արաբ. երկրների՝ ԱՀՊ-ից հետո պատմությանը վերաբերող աշխ-ների:

ՍԱՆՄԻՔԵԼԻ (Sanmicheli) Միքելե (1484–1559), Բարձր Վերածննդի շրջանի իտալացի ճարտ.: Պալատների ճակատներում միահյուսել է կոշտ արխիտեկտոնիկան և դեկորատիվ ձևերի հյութեղ պլաստիկան (Բևիլակվա պալատը Վերոնայում, 1532):

ՍԱՆՆԻԿՈՎ, Յակով, XVIII–XIX դդ-ի ռուս արդյունաբերող, Նովոսիբիրսկյան կղզիների հետազոտողը (1800–11): Հայտնաբերել է Ստոլբովի (1800) և Ֆադեևի (1805) կղզիները: Ենթադրել է Հս. սառուցյալ օվկ-ում ընդարձակ երկրի գոյություն (1811), որը, սակայն, չի հայտնաբերվել, բայց «Ս-ի երկիր» անվանումը պահպանվել է:

ՍԱՆՆԻԿՈՎԻ ՆԵՂՈՒՑ, Կոտելնի և Լյախովի (Նովոսիբիրսկյան) կղզիների միջև: Միացնում է Լապտևների և Արևելասիբիր. ծովերը: Երկ.՝ 238 *մ*, առյզն լայն.՝ 55 *կմ*, խոր.՝ 14–24 *մ*: Կոչվել է Յ. *Սաննիկովի* անունով:

ՍԱՆՈՅԱՆ Արշակ Ռուբենի (ծ. 1957), ըմբիշ: ԽՍՀՄ (1975), միջազգ. կարգի (1977) ս. վ.: Հայաստանի (1973–83), ԽՍՀՄ (1978), Եվրոպայի (1979) ազատ ոճի ըմբշամարտի չեմպիոն, աշխարհի գավաթակիր (1978): 1978-ին դասվել է Հայաստանի 10 լավագույն մարզիկների շարքը:

ՍԱՆՈՅԱՆ Սարգիս Վահանի (1924–2002), ճարտարագետ-մելիորատոր: Կենսբ. գիտ. դ-ր (1581), պրոֆ. (1982): Աշխ-ները վերաբերում են հողերում ջրալույծ նյութերի և խոնավության տեղափոխման ու տեղաբաշխման հարցերին: Մշակել է ադուտ հողերի իրացման տարբեր ռեժիմների տեսություններ:

ՍԱՆՋԱԿ (թուրք. հիմն. նշանակությունը՝ դրոշ), վոմ սուլթան. Թուրքիայում՝ *վիլայեթի* կազմում:

ՍԱՆՍԱՐԱ, (սանսկրիտ), հնդ. կրոնի և կրոն. փիլ-յան հիմն. հասկացություններից, որը հոգու (ուղղափառ բրահմանիստ-հինդուիստ. համակարգերում) կամ անհատի (բուդդայականության մեջ) վերամարմնավորումն է նոր ծնունդների շղթայում (մարդու, Աստծու, կենդանու կերպարներում) և իրագործվում է կարմայի օրենքով:

ՍԱՆՍԵՎԻԵՐՅԱ, աֆրիկական կանեփ, շուշանազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 60 տեսակ՝ Հվ. Աֆրիկայի և Ասիայի արևադարձներում: Շատ տեսակներ մշակվում են որպես ջերմոց. և սենյակ. բույսեր:

ՍԱՆՍԿՐԻՏ, Հնդկաստանի հնագույն լեզուն, հինհնդ-ի գր., մշակված տարբերակը: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի հնդիրան. ճյուղի հնդ. ենթաճյուղին: Պահպանվել է մ. թ. ա. II հզ-ամյակի գրավոր հուշարձաններով: Տարածվել է IV–IX դդ-ում:

ՍԱՆՍՈՎԻՆՈ (Sansovino, Կոնտուչի, Contucci) Անդրեա (մոտ 1467–1529), իտալացի քանդ., ճարտ.: Բարձր Վերածննդի ոգով պարզ հորինվածք. ներդաշնակությունը զուգակցել է ճգված և արտահայտիչ ձևերի հետ («Հիսուսի մկրտությունը», քանդակախումբ, 1502): Ճարտ. գործերից է Ապոստոլիկո պալատը Լորետոյում:

ՍԱՆՍՈՎԻՆՈ (Տատտի, Tatti) Յակոպո (1486–1570), բարձր և ուշ Վերածննդի շրջանի իտալացի ճարտ., քանդ.: Կառույցները (Սան Մարինոյի գրադարան, 1536–54, ևն) առանձնանում են պարզ, պլաստիկ., քանդակները՝ արտահայտիչ ձևերով (Լոջետտայի արձաններն ու բարձրաքանդակները, Վնտ., 1540–45):

ՍԱՆՏԱ ԱՆԱ, (Santa Ana) Անտոնիո Լոպես (1795–1875), Մեքսիկայի նախագահ՝ 1833–35, 1841–44, 1846–47 և 1853–55-ին, փաստացի դիկտատոր՝ 1833–55-ին:

ՍԱՆՏԱ ԱՆԱ, 1. ք. Սալվադորում՝ Պանամերիկ. մայրուղու վրա, համանուն դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 192 հզ. (2010): Սուրճի տնկաստանների կենտրոն է: Հիմնադրվել է 1569-ին: Կա XVIII դ-ի եկեղեցի:

2. Ք. Լոս Անջելեսի ագլոմերացիայում: Բն.՝ 342 հզ. (2010): Կան ավիահրթիռաշին., էլեկտրոն., սննդի արդ-յան ձեռն-ներ:

ՍԱՆՏԱ ԻՍԱԲԵԼ, (Santa Isabel), հրաբխ. կղզի Խաղաղ օվկ-ում՝ Սողոմոնի կղզիների խմբում: Տարածքը՝ 3,7 հզ. *կմ*^{2}, բարձր.՝ մինչև 1219 *մ*: Կան կոկոս. արմավենու տնկարկներ:

ՍԱՆՏԱ ԿԼԱՐԱ, (Santa Clara), ք. Կուբայում, Վիլյա Կլարա պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 220 հզ. (2010): Հիմնադրվել է 1689-ին:

ՍԱՆՏԱ ԿՐՈՒՍ (Santa Cruz) Անդերս (1792–1865), Բոլիվիայի նախագահ՝ 1829–39-ին: 1836–39-ին՝ Պերուի և Բոլիվիայի համադաշնության պրոտեկտոր: 1820-ական թթ-ին կռվել է Խ. Սան Մարտինի և Ս. Բոլիվարի բանակներում:

ՍԱՆՏԱ ԿՐՈՒՍ Վիլսոն Դոմինգո (1899–1987), չիլիացի կոմպոզիտոր, հաս. գործիչ: Չիլիի կոմպոզիտորների ազգ. ընկ-յան (1935) և Երաժշտագիտ. ինստ-ի (1946) հիմնադիրը: Հեղինակ է 4 սիմֆոնիայի (1946–68), նվագախմբային գործերի, դաշնամուր. պիեսների, ռոմանսների և այլ գործերի:

ՍԱՆՏԱ ԿՐՈՒՍ, խորջրյա փողրակ Խաղաղ օվկ-ի հվ-արմ-ում՝ Սանտա Կրուս կղզային աղեղի երկ-յամբ: Երկ.՝ 292 *մ*, միջին լայն.՝ 31 *մ*, առյզն խոր.՝ 917 *մ*:

ՍԱՆՏԱ ԿՐՈՒՍ, Սանտա Կրուս դե լա Սիեռա (Santa Cruz de la Sierra), ք. Բոլիվիայի կենտրոնում, համանուն դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,69 մլն (2010): Ունի օդանավակայան: Զարգացած են նավթավերամշակման և կաշվի արդ-յան ճյուղերը: Գեղտ. շրջանների կենտրոն է: Հիմնադրվել է1560-ին:

ՍԱՆՏԱ ԿՐՈՒՍ ԴԵ ՏԵՆԵՐԻՖԵ (Santa Cruz de Tenerife), ք. Իսպանիայում, Տեներիֆե (Կանարյան) կղզու համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 240 հզ. (2010): Նվինգստ՝ Ատլանտ. օվկ-ի ափին՝ Անդրատլանտ. երթաշրջանի բունկեր. հենակետ:

«ՍԱՆՏԱ ՉԵՉԻԼԻԱ», ազգ. ակադ. (Accademia Nationale di Santa Cecilia), երաժշտ. հաստատություն Հռոմում, հիմնադրվել է 1566-ին (ղեկ.՝ Պալեստրինա), 1838-ից՝ ակադ., 1876-ին կից ստեղծվել է լիցեյ (1919-ից՝ կոնսերվատորիա): Ունի գրադարան (խոշորագույն երաժշտ. հավաքածուներից աշխարհում), սիմֆ. նվագախումբ, համերգասրահ (1895-ից), երաժշտ. գործիքների թանգարան ևն:

ՍԱՆՏԱ ՖԵ (Santa Fe), ք-նվինգստ Արգենտինայում՝ Պարանա գետի ափին, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 515,2 հզ. (2010): Մատչելի է ծով. նավերի համար: Կաշվի, տեքստիլ արդ-յան խոշոր կենտրոն է: Ունի համալսարան, թանգարան: Հիմնադրվել է 1573-ին: Քաղաքում է Սան Ֆրանցիսկո վան. համալիրը (XVII–XIX դդ.):

ՍԱՆՏԱԼԵՆԻ, սանդալ, սանտալազգինների ընտանիքի մշտադալար ծառ: Բարձր.՝ մոտ 10 *մ*: Շատ հաճախ մակաբուծում է եղեգնաշաքարի, բամբակի, արմավենու ևնի արմատներում: Աճում է Հնդկաստանում, Մալակկա թ-կղզում և Մալայան կղզիներում: Հնդկաստանում աճեցնում են արժեքավոր և բուրավետ փայտանյութի համար (արտահանվում է):

ՍԱՆՏԱԼԻ, սանտալների լեզուն, Հնդկաստանի պետ. լեզուներից: Պատկանում է ավստրո-ասիական լեզվաընտանիքի մունդա լեզվախմբին: Օգտագործում են *դևանագարիի*, բենգալ., լատ. գրերի հիմքով գրության տեսակները:

ՍԱՆՏԱԼՃՅԱՆ Խաչիկ Հակոբի (1899–1965), դերասան, ռեժ., դրամատուրգ, թարգմանիչ: 1915-ից հանդես է եկել Ալեքսանդրիայի և Կահիրեի հայկ. թատերախմբերում, 1948–58-ին՝ ԵԵԿՄ դերասան (Անդրեաս՝ Ն. Զարյանի «Աղբյուրի մոտ», Մարկոս՝ Ա. Պապայանի «Մեծ հարսանիք», ևն): Հեղինակ է պիեսների («Սոնիա», «Մայաթ-Նովա» ևն), կատարել է թարգմ-յուններ: Նկարահանվել է «Վարդանանք կամ Ավարայրի արծիվը» (ըստ Բյուրատի, 1930) համր ֆիլմում:

ՍԱՆՏԱՅԱՆԱ (Santayana) Ջորջ (1863–1952), ամերիկացի իդեալիստ փիլ.: Քննադատ. ռեալիզմի (փիլ.) ականավոր ներկայացուցիչներից. այն մեկնաբանել է պլատոնականության ոգով: Ս. ստեղծել է ուսմունք «կեցության արքայության» մասին, որի հիմքում «իդեալական էությունների» մասին հայեցակարգն է: Հեղինակ է «Վերջին պուրիտանացին» (1935) աշխ-յան:

ՍԱՆՏԱՆԴԵՐ (Santander) Ֆրանսիսկո դե Պաուլա (1792–1840), Կոլումբիայի (Նոր Գրանադա) պետ. և քաղ. գործիչ, գեն.: 1832–37-ին՝ Նոր Գրանադա Հանրապետության նախագահ: 1810–26-ին՝ Ամերիկայում իսպ. գաղութների անկախության պատերազմի ղեկ-ներից: 1819–28-ին՝ Մեծ Կոլումբիայի փոխնախագահ:

ՍԱՆՏԱՆԴԵՐ, ք. Իսպանիայում, Կանտաբրիա ԻՄ-ի և պրովինցիայի վարչ.

կենտրոնը: Բն.՝ 180,4 հզ. (2010): Նվինգստ՝ Բիսկայան ծովի ափին: Կլիմ. առողջավայր է: Ունի համալսարան:

ՍԱՆՏԻՄԵՏՐ, *մետրի* 100-րդ մասը. նշանակվում է *սմ*-ով: Երկ-յան հիմն. միավորն է ՍԳՎ (CGS) համակարգում:

ՍԱՆՏԻՄԵՏՐԱՅԻՆ ԱԼԻՔՆԵՐ, 1–10 *սմ* երկ-յան ռադիոալիքներ: Տարածվում են ուղիղ տեսանելիության սահմանից հեռու՝ ռեֆրակցիայի, դիֆրակցիայի, մթն. ալիքատարների առաջացման և ներքնոլորտի անհամասեռություններից վերաճառագայթման շնորհիվ: Կիրառվում են ռադիոտեղորոշման և ռադիոնավագնացության մեջ:

ՍԱՆՏԱԳՕ (Santiago), *Չիլիի* մայրաքաղաքը (1818-ից), Անդերի ստորոտին՝ Պանամերիկ. մայրուղու վրա: Բն.՝ 5,2 մլն (արվարձաններով՝ 7,1 մլն, 2010): Ունի օդանավակայան, մետրոպոլիտեն: Երկրի գլխ. տնտ. կենտրոնն է, կան մեքենաշին. (էլեկտրատեխ., էլեկտրոն. ևն), մետաղամշակման, քիմ., թեթև, սննդի արդ-յան և այլ ձեռն-ներ: Գործում են բազմաթիվ բուհեր, թատրոններ և թանգարաններ, Անտարկտիդայի ուսումնասիրության ինստ-ը: Հիմնադրել են իսպանացիները 1541-ին: Կան XVI–XVIII դդ-ի եկեղեցիներ և հաս. շինություններ:

ՍԱՆՏԱԳՕ, Սանտյագո դե լոս Կաբալյերոս (Santiago de los Caballeros), ք. Դոմինիկյան Հանրապետությունում, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 661,7 հզ. (2010): Հիմնադրել է Բ. Կոլումբոսը (Ք. *Կոլումբոսի* եղբայրը) 1495-ին:

ՍԱՆՏԱԳՕ ԴԵ ԿՈՒԲԱ (Santiago de Cuba), ք-նվինգստ Կուբայի հվ-արլ-ում, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 444,8 հզ. (2011): Հիմնադրել են իսպանացիները 1514-ին: Մինչև 1556-ը եղել է Կուբայի վարչ. կենտրոնը:

ՍԱՆՏՈ ԴՈՄԻՆԳՕ (Santo Domingo), *Դոմինիկյան Հանրապետության* մայրաքաղաքը (1844-ից), Հայիթի կղզում: Բն.՝ 2,55 մլն, ագլոմերացիայում՝ 3,5 մլն (2010): Նվինգստ՝ Կարիբյան ծովի ափին: Ունի օդանավակայան, համալսարաններ, լեզվի, պատմության, երաժշտ. ակադ-ներ: Հիմնադրել է Բ. Կոլումբոսը (Ք. *Կոլումբոսի* եղբայրը) 1496-ին՝ Նոր Իզաբելա անունով: 1936–61-ին կոչվել է Սյուդադ Տրուխիլիո: Քաղաքում է Տոռե դել Օմենախե աշտարակը, Դիեգո Կոլումբոսի դղյակը, տաճարը (XVI դ.): Հին քաղաքը Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՍԱՆՏՈՐԻՈ (Santorio) Սանտորիո (լատինացված՝ Սանկտորիուս, Sanctorius) (1561–1636), իտալացի բժիշկ, ֆիզիոլոգ և անատոմ, յատրոֆիզիկայի ներկայացուցիչ: Առաջիններից է կիրառել հետազոտության փորձարար. մեթոդը և տվյալների մաթ. մշակումը: Հորինել է մի շարք սարքեր: Հետազոտել է նյութերի փոխանակությունը՝ իր հորինած խցիկում:

ՍԱՆՏՈՒ ԱՆԴՐԵ (Santo André), ք. Բրազիլիայում՝ Մեծ Սան Պաուլուի ագլոմերացիայում: Բն.՝ 684 հզ. (2010):

ՍԱՆՏՈՒՇ (Santos) Ժոզե Էդուարդու դուշ (ծ. 1942), Անգոլայի նախագահ՝ 1979–2017-ին: Բանակի գեն.:

ՍԱՆՏՈՒՍ (Santos), ք. Բրազիլիայի Սան Պաուլուի նահանգում: Բն.՝ 413 հզ. (2010): Երկրի կարևորագույն նվինգստ-ներից է, Սան Պաուլուի օդանավակայան-նվինգստ՝ Ատլանտ. օվկ-ի ափին (տարեկան բեռնափոխադրությունը՝ 800 մլն *տ* և ավելի, Լատ. Ամերիկայի խոշորագույն բեռնարկղ. տերմինալ, բրազիլ. սուրճի արտահանման 3/4-ը): Զարգացած են սննդի, քիմ., նավթավերամշակման արդ-յան ճյուղերը, մեքենաշինությունը, ձկնարուծությունը, գրոսաշրջությունը: Հիմնադրվել է 1537-ին: Կան XVI–XVIII դդ-ի ճարտ. հուշարձաններ:

ՍԱՆՐԱԿԻՐՆԵՐ (Ctenophora), ծով. անողնաշարների տիպ: Նախկինում դասում էին աղեխորշավորների տիպին: Երկ.՝ 2–3 *մմ*–2,5 *մ* (Վեներայի գոտի): Մարմնի երկ-յամբ կա 8 շարք թիավարման թիթեղներ, որոնք ունեն սանրի ձև (այստեղից՝ անվանումը): Հայտնի է 100 տեսակ՝ տարածված բոլոր ծովերում: Մի շարք տեսակներ մթության մեջ լուսարձակում են:

ՍԱՆՐԻԿՆԵՐ, ծով. երկփեղկանի փափկամարմինների ընտանիք: Խեցու կողքերը վառ գունավորված են (տրամագիծը՝ մինչև 20 *սմ*): Մի քանի տասնյակ տեսակներ տարածված են լայնորեն, այդ թվում՝ 15 տեսակ՝ Սև ծովում, հս. և հեռավորարլ. ծովերում: Որոշ տեսակներ արդյունագործ. և բազմացման օրգանիզմներ են:

ՍԱՆՋՅԱՆ, ցածրավայր Չինաստանում՝ Ամուր և Ուսուրի (ստորին հոսանքում) գետերի միջև: Երկ.՝ 400 *կմ*: Հեղեղումների ժամանակ տարածքի զգալի մասը ջրածածկվում է: Կան սրածայր լեռներ:

ՍԱՆԿՀԱ (սանսկրիտ՝ samkhya – թիվ, իմաստ, դատողություն), 6 ուղղափառ (վեդաների հեղինակությունն ընդունող) համակարգերից հնդ. փիլ-յան մեջ: Հիմնադիրը Կապիլան է (մ. թ. ա. VII դ.), Ս-ի ծաղկման շրջանը՝ III–IV դդ-ից մինչև VIII–IX դդ.:

ՍԱՊԱՀ-ԳՅՈՒԼՅԱՆ (Տեր-Դանիելյան) Ստեփանոս (1861–1928), հաս., քաղ. գործիչ, հրապարակախոս: Հաչակ. կուս-յան անդամ: Խմբագրել է *«Հնչակ»* թերթը, հիմնադրել (1903, Բոստոն) «Երիտասարդ Հայաստան» պարբ-ը: 1908-ի երիտթուրք. հեղաշրջումից հետո գործել է Թուրքիայում: «Ինքնավար Հայաստան» (1915), «Պատասխանատուները» (1916) և այլ աշխ-ներում անդրադարձել է հայ ազատագր. շարժման պատմությանը, դատապարտել երիտթուրքերի քաղ-յունը:

ՍԱՊԱՍԱՁՈՒԿ (Oncorhynchus gorbuscha), սաղմոնների սեռի գաղթող ձուկ: Երկ.՝ մոտ 0,5 *մ*, կ. զ.՝ մոտ 1,5 *կգ*: Տարածված է Խաղաղ օվկ-ի հս. մասում, հազվադեպ՝ Հս. սառուցյալ օվկ-ի գետերում՝ Լենայից արլ.: Արդյունագործ. կարևոր ձուկ է:

ՍԱՊԳԻՐ Հենրիխ Վենիամինովիչ (1928–1999), ռուս. բանաստեղծ, արձակագիր: Հեղինակ է «Բանաստեղծություններ-87» (1987), «Մոսկովյան առասպելներ» (1989), «Հատընտիր» (1993) և այլ գործերի: Հայ. հրատարակվել է «Ձուգահեռ մարդը: Բանաստեղծություններ, պատմվածք» (2014) ժող-ը:

ՍԱՊՈՆԻՆՆԵՐ, բնական օրգ. միացություններ (գլիկոզիդի), որոնց մոլ-ներն առաջացել են մոնոսախարիդներից և եռտերպենոիդներից կամ ստերոիդներից: Պարունակվում են բազմաթիվ բույսերում, այդ թվում՝ որոշ դեղաբույսերում: Փրփրագոյացուցիչներ են, ստերոիդային Ս-ից ստանում են ստերոիդային հորմոններ:

ՍԱՊՈՆՋՅԱՆ Օգսեն Մուրադի (1908–1987), մեխանիկոս: Տեխ. գիտ. դ-ր (1950), պրոֆ. (1950): ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1960): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1962): Աշխ-ները վերաբերում են բարակ առաձգ. սալերի ծռման տեսությանը: Հայտնաբերել և բացատրել է «Սապոնջյան–Բաբուշկայի պարադոքսը»:

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան:

ՍԱՊՈՏԵԿՆԵՐ, ինդկաց. ժողդ Մեքսիկայի Օհակա նահանգում: Թվաքանակը՝ 500 հզ. (2010): Լեզուն օտմանգեյա լեզվախմբի արլ. ենթաբաժնի սապոտերան է: Կաթոլիկ են:

ՍԱՊՊՈՐՈ, ք. Ճապոնիայում, Հոկայդո պրեֆեկտուրայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,89 մլն (2010): Ունի մետրո, համալսարան, բուսաբ. այգի, թանգարան: Նվինգստ-ը՝ Օտարու: Զմեռ. սպորտի կենտրոն է: 1972-ին Ս-ում տեղի են ունեցել XI ձմեռ. օլիմպ. խաղերը:

ՍԱՊՍԱՆ (Falco peregrinus), *բազեների* ընտանիքի գիշատիչ թռչուն, նստակյաց է, հազվագյուտ: Մարմնի երկ.՝ 40–50, թևերի բացվածքը՝ 95–110 *սմ*, կ. զ.՝ 600–1300 *գ*: Հիմն. սնունդը թռչուններն են, որոնց որսում է թռիչքի ժամանակ: Թռիչքն արագ է և ճկուն: Որոշ վայրերում օգտագործվում է որպես որսորդ թռչուն: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՍԱՊՐՈԲԻՈՆՏՆԵՐ, սապրոբները (< հուն. sapros – փտած և bios – կյանք), բույսեր և կենդանիներ, որոնք ապրում են օրգ. նյութերով աղտոտված ջրերում: Աղտոտվածության աստիճանից կախված՝ տարբերում են պոլի-, մեզո- և օլիգոս-Ս.: Զրամբարները համապատասխանաբար կոչվում են պոլի-, մեզո- և օլիգոսապրոբայիններ:

ՍԱՊՐՈԼԻՏՆԵՐ (հուն.՝ sapros – փտած), ցածրակարգ բույսերի և պարզագույն միկրոօրգանիզմների մնացորդների փոխակերպման նյութ, որը կուտակվում է լճային կամ ծովալճակ. ֆացիաների պայմաններում: Ցնդող նյութերի ելքը՝ 60–90 %, առաջն. կուպրինը (ձյութինը)՝ 50 %: Հեղուկ վառելանյութի ստացման հումք է:

ՍԱՊՐՈՊԵԼ (< հուն. sapros – փտած և pelos – ցեխ, տիղմ), օրգանահանք. նստվածք, տիղմ. բաղկացած է հիմնականում օրգ. նյութերից և ջր. օրգանիզմների մնացորդներից: Օգտագործվում է որպես պարարտանյութ:

ՍԱՊՐՈՖԱԳՆԵՐ (< հուն. sapros – փտած և ...*ֆագ*), կենդանիներ, որոնք սնվում են փտած մնացորդներով և կենդանիների արտաթորություններով: Ս. են որոշ կաթնասուններ (օր.՝ բորենիները), թռչուններ (անգղերը ևն), միջատներ (դիպակներ և կաշկեներ բզեզներ, մի շարք ճանճեր ու թրթուրներ ևն):

ՍԱՊՐՈՖԻՏՆԵՐ (< հուն. sapros – փտած և phiton – բույս), բույսեր, սնկեր և բակտերիաներ, որոնք սնվում են մահացած օրգանիզմների և կենդանիների օրգանիզմների օրգ. նյութերով: Տարասուն օրգանիզմներ են: Քայքայում են կենդանիների դիակներն ու բուս. մնացորդները:

ՍԱՋԱՆՆԵՐ, **Սաջիներ**, Աբբասյանների նշանակած ամիրաներ Ատրպատականում՝ 890–929-ին (ընդմիջումով): Ս. բազմիցս արշավել են Հայաստան: *Աշոտ Բ Երկաթը* 929-ին վերջնականապես վտարել է Ս-ի հրոսակներին: Նույն տարում էլ Ս. կորցրել են իրենց իշխանությունն Ատրպատականում:

ՍԱՌԵՑՆՈՂ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ, 2 կամ ավելի պինդ, կամ պինդ և հեղուկ նյութերից բաղկացած խառնուրդներ, որոնց բաղադրիչները միմյանց խառնելիս նրանց լուծման կամ հալման ժամանակ

ջերմություն է կլանվում, և խառնուրդի ջերմաստիճանը նվազում է: Օր.՝ մանրացված սառույց և կերակրի աղ խառնելով՝ ստանում են – 21,1°C:

ՍԱՌԵՑՆՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐ, սարքեր, որոնք ցածր ջերմաստիճանով մարմիններից ջերմությունը փոխանցում են շրջակա միջավայրին: Տարբերում են ճնշումային (գազ. և գոլորշ.), արսորբցիոն, գոլորշաինժեկտոր. և ջերմաէլ. Ս. մ-ներ: Սառեցվող շենքերում սառնություն ստեղծելու և պահպանելու համար նախատեսված սարքավորումների համալիրը կոչվում է **սառեցման տեղակայանք**: Օգտագործվում են պահպանման հատուկ ռեժիմով մթերքի սառեցման, պահպանման և այլ նպատակներով:

ՍԱՌԸ ԵՌԱԿՑՈՒՄ, առանց տաքացման (սովորաբար՝ մոտ 20°C-ում) եռակցում ճնշմամբ, որը միացման մասում ստեղծում է զգալի պլաստիկ. դեֆորմացիա: Կիրառվում է բարձր պլաստիկություն ունեցող նյութերի (տարատեսակ մետաղներ, պլաստմասսաներ ևն) միացման համար: Ս. ե. են անվանում նաև թուջե դետալների աղեղային եռակցումը՝ առանց նախնական տաքացման:

ՍԱՌԸ ՋԵՆՔ, ձեռնամարտի զենք: Լինում է հարված., ծակող, հատող, ծակող-հատող, ծակող-կտրող ևն: Երևան է եկել վաղ շրջանում՝ որպես որսի միջոց, այնուհետև դարձել է մարտ. զենք: Մինչև XV–XVII դդ. Ս. զ. եղել է զենքի հիմն. տեսակը: Հրաձգ. զենքի կատարելագործումն աստիճանաբար դուրս է մղել Ս. զ.: Տես նաև *Զենք, Հրազեն*:

ՍԱՌԸ ԿԱԹՈԴ, էլեկտրավակուում. սարքի *կաթոդ*, որն աշխատում է առանց հատուկ նախն. տաքացման՝ ինքնաէլեկտրոն. առաքման էֆեկտով: Նախապես կիսահաղորդիչ նյութերից պատրաստվող Ս. կ-ները 1970-ական թթ-ին փոխարինվել են ածխածնային մանրաթելի հիմքով կաթոդներով. օգտագործվում են ռենտգեն-խողովակներում, հզոր ԳԲՀ-ական սարքերում, էլեկտրոն. գեներատորներում՝ լազերների գրգռման նպատակով:

ՍԱՌԸ ՆԵՅՏՐՈՆՆԵՐ, 10^{-7}-ից մինչև $5 \cdot 10^{-3}$ *էՎ* էներգիայով *նեյտրոնները*:

«ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄ», պետությունների և պետությունների խմբավորումների ռազմաքաղ. հակամարտությունը բնութագրող եզրույթ, որին բնորոշ էին առճակատումը, սպառազինությունների մրցավազքը, միջուկ. զենքի օգտագործման սպառնալիքը, ահաբեկման դիվանագիտ-յունը, տնտ. գործոնի օգտագործումը որպես հակառակորդին հյուծելու միջոց ևն: «Ս. պ.» առաջացել է ԵՀՊ-ից հետո, ավարտվել 1980-ականների 2-րդ կես–90-ական թթ-ի սկզբին:

ՍԱՌՆԱԶԴԱԿ, **սառնակիր**, սառեցնող մեքենայի աշխ. մարմինը (օր.՝ գոլորշաճնշ. մեքենաներում՝ ֆրեոններ, ամոնիակ ևն, արսորբցիոն մեքենաներում՝ ամոնիումի և լիթիումի բրոմիդի ջր. լուծույթներ, գոլորշիինժեկտոր. մեքենաներում՝ ջր. գոլորշի ևն):

ՍԱՌՆԱԿՈՒՂՔԻ ԳԱՆՁ, արծաթե հնագույն դրամների գանձ-հավաքածու (ՀՊԹ, հայտնաբերվել է 1945-ին ՀՀ Սյունիքի մարզի Սառնակունք գ-ից մոտ 1 *կմ* հս-արլ.՝ կավանոթի մեջ): Ուշ հելլենիստ. ժամանակաշրջանին վերաբերող ամենամեծ և արժեքավոր հավաքածուն է Հայաստանի տարածքում հայտնաբերվածների մեջ: Ամենահները՝ Ալեքսանդր Մակեդոնացու (մ. թ. ա. IV դ.) հունա-մակեդոն., իսկ ամենանորերը Մարկոս Անտոնիոսի (մ. թ. ա. 31) հռոմ. դրամներն են (ենթադրվում է, որ գանձերը թաղվել են մ. թ. ա. մոտ 30–20-ական թթ-ին): Դրամների հայկ. խումբն ընդգրկում է Տիգրան Բ Մեծի և Արտավազդ Բ-ի գահակալության տարիներին թողարկված չորեքդրամյաններ ու դրաքմեներ:

ՍԱՌՆԱԼԵՁՈՒՆԻ ՁՐԱՄԲԱՐ, ՀՀ Շիրակի մարզում՝ Սառնաղբյուր գ-ից 2 *կմ* արմ.՝ Ճկկան գետի վերին հոսանքում: Շահագործվել է 1972-ին: Երկ.՝ 3,5 *կմ*, լայն.՝ մինչև 160 *մ*: Մակերեսը՝ 0.58 *կմ*^{2}, ընդհ. ծավալը՝ 4,65 *մլն մ*^{3}, օգտ.՝ 4,55 մլն *մ*^{3}: Ոռոգում է մոտ 883 *հա* հողատարածք:

ՍԱՌՆԱՐՅՈՒՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ, **պոյկիլոթերմ կենդանիներ** (< հուն. poikilos – տարբեր և therme – ջերմություն), **փոփոխաջերմ կենդանիներ**, որոնց մարմնի ջերմությունը փոխվում է շրջակա միջավայրի ջերմաստիճանից կախված (անողնաշարներ, ձկներ, երկկենցաղներ, սողուններ): Տես նաև *Տաքարյուն կենդանիներ*:

ՍԱՌՆԵՅ ԿՈՍՏԱ (Sarney Costa) Ժոզե (ծ. 1930), Բրազիլիայի նախագահ՝ 1985–90-ին, Սենատի խոսնակ՝ 1995–97, 2003–05 և 2009–13-ին: 1980–84-ին՝ Բրազիլիայի ս-դ. կուս-յան նախագահ: Գրող, բանաստեղծ:

ՍԱՌՅԱԴԱՇՏԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ, երկրագնդի երկրբ. պատմության համեմատաբար տևական ժամանակաշրջան, որի ընթացքում կլիմայի ընդհ. ցրտեցման պայմաններում իրար են հաջորդել առավել ցուրտ և համեմատաբար տաք կլիմայով ժամանակահատվածներ: Ս. ժ-ներ եղել են ստորին պրոտերոզոյում՝ Հս. Ամերիկա, վերին ռիֆեյում՝ Աֆրիկա և Ավստրալիա, վենդում՝ Եվրոպա, Ասիա և Հս. Ամերիկա, օրդովիկում՝ Աֆրիկա, կարբոնի վերջին և պերմի սկզբին՝ Գոնդվանա մայրցամաքների վրա: Առավել լավ է ուսումնասիրված պլեյստոցենի Ս. ժ.:

ՍԱՌՅԱԴԱՇՏԱՅԻՆ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, նստվածքների տեսակ, որոնք առաջանում են սառցադաշտերի և հալոցքաջրերի գործունեության հետևանքով, տեղափոխվում սառցասարերով: Ըստ բեկոր. նյութի բնույթի՝ առանձնանում են գլաքար. կավեր, կավավազներ, շեղաշերտ ավազներ, մանրախիճ ևն:

ՍԱՌՅԱԴԱՇՏԵՐ, մթն. պինդ տեղումներից երկրի մակերևույթին գոյացած դանդաղ շարժվող սառցի բնական կուտակումներ: Առաջանում են այն շրջաններում, որտեղ տարվա ընթացքում տեղումներն ավելի են, քան դրանք հալվում և գոլորշիանում են: Ս-ի սահմաններում առանձնանում են սնման և աբլյացիայի մարզեր: Ս. բաժանվում են ցամաք. սառցադաշտ. ծածկութ., ծանծաղուտ. (շելֆային) և լեռն. տիպերի: Ժամանակակից Ս-ի ընդհ. տարածքը մոտ 16,3 մլն *կմ*^{2} է (ցամաքի տարածքի 10,9 %-ը), սառույցի ընդհ. ծավալը՝ 28 մլն *կմ*^{3}:

ՍԱՌՅԱԼԻ, լ-գազաթ ՀՀ Վայոց ձորի մարզում: Բարձր.՝ 3433 *մ*:

ՍԱՌՅԱՀԱՍ, սառչող ջրավազաններում այլ նավերի համար նավարկուղի բացող և նավագնացությանն օժանդակող նավ: Ռուս. նավատորմի առաջին ջերմանավ-Ս. «Պայլոտի» (1864) շարժիչի հզորությունը 44,6 *ԿՎտ* է: Աշխարհում 1-ին արկտիկ. Ս.՝ «Երմակը», կառուցվել է 1859-ին՝ Ս. Օ. Մակարովի ղեկավարությամբ: Ժամանակակից ամենախոշոր Ս-ները ռուս. արտադր-յան «Արկտիկա» (1975), «Սիբիր» (1977), «Ռոսսիա» (1986) նավերն են, իսկ խորհրդ. «Լենին» (1959) Ս. 1-ին ատոմ. ոչ ռազմ. նավն էր:

ՍԱՌՅԱՉԿՆԵՐ, պերկեսակերպների կարգի ձկների ընտանիք: Երկ.՝ մինչև 70 *սմ*: Հայտնի է 15 տեսակ՝ անտարկտիկ. և սուբարկտիկ. ջրերում: Արդյունագործ. ձուկ է:

ՍԱՌՅԱՋԱՐԴ 1242, ճակատամարտ ռուս. զորքերի (հրամ.՝ Նովգորոդի իշխան Ա. Յ. *Նևսկի*) և գերմ. Լիվոնյան ասպետների միջև ապրիլի 5-ին Չուդ լճի սառույցի վրա: Ասպետները ջախջախվել են՝ կորցնելով իրենց կազմի մոտ 2/3-ը: Հաղթանակը Նովգորոդի հանրապետության արմ. սահմաններն ապահովել է գերմ. խաչակիրների ներխուժումներից:

ՍԱՌՅԱՄՍԸ, **այսբերգ** (անգլ.՝ iseberg), սառցադաշտից կոտրված-անջատված զանգվածներ: Լինում են լողացող կամ ծանծաղուտի մեջ խրված: Ձրի մակերևույթից բարձր.՝ մինչև 70 *մ* (Արկտիկա), 100 *մ* (Անտարկտիկա): Ձրի տակ է Ս-երի ծավալի մինչև 90 %-ը: Ս-ի առաջացման հիմն. շրջաններն են՝ Անտարկտիդայի շելֆային սառցադաշտերը, Կանադ. Արկտիկ. կղզեխմբի կղզիները, Գրենլանդիան:

ՍԱՌՅՈՒՅԹԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, **գեոկրիոլոգիա**, գիտ-յուն սառած գրունտների և ապարների, դրանց առաջացման զարգացման պատմության, գոյության պայմանների, ինչպես նաև դրանց սառչելու, հալվելու և վերազոյացման գործընթացների հետ կապված երևույթների մասին:

ՍԱՌՈՒՅՑ, ջուրը պինդ վիճակում: Հայտնի են Ս-ի 10 բյուրեղ. ձևափոխություններ և ամորֆ Ս.: Բնության մեջ հանդիպում է Ս-ի միայն 1 ձևը, խտ.՝ 931 *կգ/մ*^{3}, ջերմունակությունը 0°C-ում՝ 2,09 *կՋ/կգ K*, հալման ջերմությունը՝ 324 *կՋ/կգ*, որը հայտնի է որպես Ս. (մայրցամաք., լողացող, ստորգետնյա), ձյուն և եղյամ: Երկրագնդի բնական Ս-ները զբաղեցնում են 72,4 մլն *կմ*^{2} մակերես: Օգտագործվում է սննդամթերքի սառեցման և պահպանման, քաղցրահամ ջուր ստանալու համար, բժշկության մեջ ևն:

ՍԱՍԱԿՆԵՐ, ավստրոնեզ. ժողգ Ինդոնեզիայի Լոմբոկ կղզում (2,6 մլն 2000): Լեզուն՝ սասակերեն: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են, որոշ մասը պահպանել է ավանդ. հավատալիքները:

ՍԱՍԱՆՅԱՆՆԵՐ, կառավարող հարստություն Իրանում 224–651-ին: Հիմնադրել է *Արտաշիր I*-ը: Ս-ի պետությունը նվաճել են (VII դ.) արաբները: Կարևորագույն ներկայացուցիչներն են Շապուհ I, Շապուհ II, Կավադ I, Խոսրով I Անուշիրվան, Խոսրով II Ափարվեզ արքաները:

ՍԱՍԱՆՅԱՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, պետություն Մերձ. և Միջին Արևելքում III–VII դդ-ում՝ պարսիկ *Սասանյանների* գլխավորությամբ: Հիմնադրել է *Արտաշիր I*-ը (226–239/241): Ս. պ-ում պետ. կրոնը *զրադաշտականությունն* էր: Հայաստանի նկատմամբ գերիշխանություն հաստատելու համար Հռոմի և Ս. պ-յան վեճը լուծվել է 387-ին՝ Հայաստանի բաժանմամբ: Վահրամ (Բահրամ, Վռամ) V Գոռ արքայի օրոք վերացվել է (428) հայ Արշակունիների թագավորությունը. Հայաստանի արլ.՝

պարսկ. մասը դարձել է մարզպանություն: 591-ին Ս. պ. և Բյուզանդիան Հայաստանը միմյանց միջև բաժանել են 2-րդ անգամ: VII դ-ում՝ Հազկերտ III-ի (632–651/652) օրոք, Ս. պ. նվաճել են արաբները:

ՍԱՍԱՐԻ (Sassari), ք. Իտալիայի Սարդինիա կղզում, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 129 հզ. (2010): Տնտ-յան հիմքը զբոսաշրջությունն է:

ՍԱՄԵԲՈ, ք. Ճապոնիայում՝ Կյուսյու կղզու հս-արմ-ում: Բն.՝ 262 հզ. (2010): Նվ/ինգատ՝ Արլ-չին. ծովի Սասերո ծովախորշում: Հս. շրջանում արդյունահանում են մարգարիտ:

ՍԱՍԹՐՈԱՄԻՋՈՅՈ (Sastroamidjojo) Ալի (1903–1975), Ինդոնեզիայի վարչապետ՝ 1953–55 և 1956–57-ին, 1960–66-ին՝ Ինդոնեզիայի Ազգ. կուս-յան նախագահ:

ՍԱՍԿԱՉԵՎԱՆ (Saskatchewan), 1. պրովինցիա Կանադայի կենտր. մասում: Տարածքը՝ 651 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,1 մլն (2016): Վարչ. կենտրոնը՝ Ռիջայնա: 2. Գետ Կանադայում, ձևավորվում է Հս. և Հվ. Ս-ների միախառնումից: Երկ.՝ 544 *կմ*, ավազանի մակերեսը՝ 385 հզ. *կմ*^{2}: Ջրի միջին ծախսը՝ 780 *մ*^{3}/*վ*: Թափվում է Վինինիպեգ լիճը:

ՍԱՍԿԱՏՈՒՆ (Saskatoon), ք. Կանադայի Սասկաչևան պրովինցիայում՝ Հվ. Սասկաչևան գետի ափին: Բն.՝ 205,7 հզ., ագլոմերացիայում՝ 260 հզ. (2010):

«ՍԱՄՆԱ ԾՌԵՐ», **«Սասունցի Դավիթ»**, հայ ազգ. էպոսը: Կոչվել է նաև «Սասնա փահլևաններ», «Սասնա տուն», «Սասունցի Դավիթ կամ Մհերի Դուռ» ևն: «Ս. ծ.»-ում գործում է վիպ. հերոսների չորս հիմն. սերունդ՝ Սանասար և Բաղդասար, Մեծ կամ Ջոջ Մհեր, Դավիթ, Փոքր կամ Պստիկ Մհեր: Յուրաքանչյուր սերունդ ունի վիպ. իր առանձին պատմությունը, որը վիպասացներն անվանել են ճյուղ: «Ս. ծ.»-ի հերոսներից Սանասարի և Բաղդասարի մասին ինագույն գրավոր ավանդույթը պահպանվել է Աստվածաշնչում, հետագայում՝ Մովսես Խորենացու և Թովմա Արծրունու մատյաններում: «Ս. ծ.» ավանդվել է բանավոր. առաջինը հայտնաբերել և ամբողջությամբ գրառել է Գարեգին *Սրվանձտյանը* 1873-ին: Ցայսօր գրառվել է շուրջ 160 պատում, որից մոտ 70-ը հրատարակվել են: «Ս. ծ.»-ի գր. մշակումներն սկսվել են դեռևս 1890-ական թթ-ին: Համահավաք տեքստը լույս է տեսել 1939-ին, թարգմանվել է ռուս., վրաց., բելառուս., չին., ֆրանս., անգլ., պարսկ., լեհ. ևն: «Ս. ծ.» լայնորեն արտացոլվել է կերպարվ-ում, երաժշտության մեջ:

ՍԱՍՈՒՆ (Սասնոջուր), գետ Հայկ. լ-աշխարհում, Բաղիդղ (Բաթման) գետի (Արմ. Տիգրիսի համակարգ) ձախ վտակը: Երկ.՝ մոտ 65 *կմ*, ավազանը՝ մոտ 600 *կմ*^{2}: Սկիզբ է առնում Խաչառաջ լ-շղթայի (Հայկ. Տավրոսի համակարգ) հվ. լանջից, հոսում հս-արլ-ից հվ-արմ.:

ՍԱՍՈՒՆ, Սանասուն, Սանասունք, պատմաաշխարհագր. մարզ, գվո Աղձնիք նահանգ-ում՝ Հայկ. Տավրոսի լ-համակարգում: Հնագույն կենտրոնն էր *Սանասուն* բերդը: Բարձր գագաթներն են Մարութասարը (Մարաթուկ), Անդոկը (Անդոքասար), Կեպին (Սբ Հակոբ), Ծովասարը: Ս-ի լեռներից սկիզբ է առնում և Տիգրիս թափվում 5 գետ: Գլխ. սրբավայրերից էին Սբ Պետրոս առաքյալի (Մարաթուկի ստորոտին, գվո-ի եպս-ի առաջնորդանիստը), Սբ Աստվածածին (Մարաթուկի գագաթին) վանքերը ևն: Ս-ի տարածքը մտել է Վանի թագավորության, *Երվանդունիների*, *Արտաշեսյանների*, հայ *Արշակունիների* թագավորությունների կազմերի մեջ: VIII դ-ի վերջից Ս-ում իշխել են Մամիկոնյաններից սերող *Թոռնիկյանները*: Արաբ նվաճողների դեմ Ս-ի պայքարը հիմք է դարձել «*Սասնա* ծռեր» էպոսի համար: 885-ից, Տարոնի իշխանության կազմում, Ս. մտել է Բագրատունիների թագավորության մեջ: 1260-ական թթ-ին Հուլավու խանը Ս. միացրել է իր իլխանությանը և Ս-ի կառավարիչ է կարգել *Սադուն Բ Արծրունուն*: XVI դ-ից Ս. ենթարկվել է օսմ. տիրապետությանը՝ պահպանելով կիսանկախ վիճակը: Այս շրջանում Ս-ում հաստատվել են քրդեր: XIX դ-ի վերջին Ս. դարձել է հայ ազգ-ազատագր. շարժման կենտրոն, որտեղ գործել են Արաբոն, Վ. Գոլոշյանը, Մ. Տամատյանը, Հ. Պոյաջյանը (Մեծն Մուրադ), Հրայրը և ուր.: XX դ-ի սկզբին Ս-ի տարածքի ավելի քան 400 բնակավայրից շուրջ 250-ը հայաբնակ էր: Մեծ եղեռնի ժամանակ Ս-ի 60 հզ. բնակչությունից փրկված շուրջ 15 հզ. սասունցի հանգրվանել է Արլ. Հայաստանում՝ Աշտարակի ու Թալինի շրջանների գյուղերում (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզի տարածք): Տես նաև *Սասունի ապստամբություններ 1894*, *1904*, *Սասունի ինքնապաշտպանություն 1915*:

ՍԱՍՈՒՆԱՇԵՆ, գետ ՀՀ Արագածոտնի մարզում՝ Մաստարայի սելավի համակարգում: Երկ.՝ 22 *կմ*, ավազանը՝ 19 *կմ*^{2}: Սկիզբ է առնում Արագածի հվ-արմ. լանջից:

ՍԱՍՈՒՆԻ Կարո (Կարապետ, 1889–1977), հաս-քաղ. գործիչ, պատմաբան: Գործել է Տարոնում: ԱՀՊ-ի տարիներին՝ հայկ. կամավոր. շարժման գործուն մասնակից: 1921-ի *Փետրվարյան ապստամբության* ղեկ-ներից: Երևանի՝ բոլշևիկների վերագրավումից հետո անցել է արտերկիր: 1962–74-ին՝ *«Բագին»* հանդեսի խմբ.: Աշխ-ները վերաբերում են հայ ազգ-ազատագր. շարժման, Մեծ եղեռնի, ՀՀ պատմության և այլ հարցերի:

ՍԱՍՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐ 1894, **1904,** *Սասունի* հայերի զինվ. ելույթները թուրք. բռնապետության դեմ: 1890-ական թթ-ին թուրք. իշխանությունները որոշել են վերացնել Սասունի հայերի կիսաանկախ վիճակը: Սասունցիները, համբարձում *Պոյաջյանի* գլխավորությամբ, նախապատրաստվել են ինքնապաշտպան: 1-ին հարվածը թուրքերը հասցրել են հս-ից՝ 1894-ի հուլիսի 27-ին՝ Շենիկ և Սեմալ գ-երի շրջանում, սակայն զգալի կորուստներ կրելով նահանջել են: Օգոստ. սկզբներին թշնամու գերակշիռ ուժերը պաշարել են Անդոկը, որտեղ պատսպարվել էին սասունցիները, և օգոստ. 13-ին անցել հարձակման: Դիմադրելով մինչև օգոստ. 27-ը՝ սասունցիները նահանջել են Կեպինի բարձունքներն ու Տալվորիկի կիրճերը, որտեղ նրանց շրջապատել են քրդ. բազմաքանակ ուժերը: Ավերվել է 40-ից ավելի գյուղ, սպանվել ավելի քան 10 հզ. անզեն հայ: Ինքնապաշտպ-յունը միջազգ. լայն արձագանք է ունեցել. Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը սուլթան. կառ-յանը ներկայացրել են բարեփոխումների ծրագիր (տես *Մայիսյան բարենորոգումներ 1895*):

1904-ին Սասունի հայերը կազմակերպել են զինված ելույթ: Հայկ. ուժերը ղեկավարել են *Հրայրը*, *Անդրանիկը*, *Գևորգ Չավուշը*, Հակոբ *Կուրոյանը* և ուր.: Թուրք. (10 հզ.) և քրդ. (5 հզ.) զորքերը Քեոսե Բինբաշու գլխավորությամբ քանիցս պարտվել են: Սակայն ապրիլի 19-ին 12 հրանոթի ուղեկցությամբ անցել են գրոհի: Մի քանի օր դիմադրող հայերը, զինամթերքը սպառվելու պատճառով, քաշվել են Ալուճայի բարձունքները: Թուրքերը կոտորել են մոտ 8 հզ. մարդու, ավերել ու կողոպտել շուրջ 2 հզ. տուն:

Սասունցիների պաշտպ-յունը և մեծ տերությունների միջամտությունը հարկադրել են սուլթանին ժամանակավորապես հրաժարվել Սասունը վերջնականապես ընկճելու մտքից:

ՍԱՍՈՒՆԻ ԲԱՐԲԱՌ, հայ-ի «կը» ճյուղի բարբառ: Խոսվել է Արմ. Հայաստանի Սասուն գվո-ում, այժմ խոսում են Թալինի և Աշտարակի շրջաններում վերաբնակեցված սասունցիները: Ունի եռաստիճան (բ–պ–փ) բաղաձայն. համակարգ:

ՍԱՍՈՒՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 1915, *Սասունի* հայերի գոյամարտը Մեծ եղեռնի տարիներին: Սասունի պաշտպ. խմբերը Փեթարա Մանուկի, Ռուբենի (*Տեր-Մինասյան*), Կոմսի, Իշխան Շառոյի, Մուշեղի, Մշեցի Մճոյի (Մկրտիչ *Պոլեյան*) և ուր. գլխավորությամբ 1915-ի մարտին հետ են շպրտել թուրք. և քրդ. ուժերին: Համառ մարտեր են տեղի ունեցել ապրիլ–մայիսին: Հունիսին Տալվորիկի մարտիկները հանկարծակի հարձակումով խուճապի են մատնել քրդերին և գրավել ռազմավար. նշանակություն ունեցող Մազի (Սատանի) կամուրջը: Այնուամենայնիվ, թուրք-քրդ. մեծաքանակ ուժերն աստիճանաբար բոլոր կողմերից սեղմել են պաշարման օղակը, իսկ հունիսին անցել վճռ. հարձակման: Անդոկի, Ծովասարի և Գեբինի լ-ներում սասունցիները դիմադրել են մինչև օգոստ. 3-ը, սակայն պաշտպանների մեծ մասը զոհվել է:

60 հզ. հայից ավելի քան 45 հզ-ին կոտորել են, մնացածները թաքնվել են լեռներում ու ձորերում, և միայն 1916-ի գարնանը, երբ ռուս. զորքերը գրավել են Մուշը, մի քանի հզ. սասունցիներ իջել են լեռներից ու փրկվել կոտորածից:

ՍԱՍՈՒՆԻ ԼԵՌՆԵՐ, **Սասնա լեռներ**, Հայկ. Տավրոսի արլ. հատվածը: Տարածվում են մերձզուգահեռականի ուղղությամբ՝ Աչքաքար (Ակչակարա) լ-շղթայից մինչև Բաղեշ (Բիթլիս) գետը: Երկ.՝ մոտ 110 *կմ*, լայն.՝ 30–50 *կմ*, բարձր.՝ մինչև 2967 *մ* (Մարութա լ.): Առանցք. լ-շղթաները ջրբաժան են Արածանիի և Տիգրիսի միջև: Ներքին և արտաքին հաղորդակցության համար կարևոր նշանակություն ունեն Զորապահակ, Կոպի, Խաչի և այլ լ-անցքեր: Օգտ. հանածոներից կան բազմամետաղային, պղնձի ու երկաթի հանքավայրեր, նավթի երևակումներ: Լավ է արտահայտված բարձունքային գոտիականությունը՝ չոր մերձարևադարձայինից մինչև ալպ. մարգագետիններ: Գետահովիտներում, լ-անտառ. գոտ շագանակագույն հողերի վրա տարածված են սաղարթավոր անտառները՝ կաղնու, հաճարենու, թխկու, կաղամախու գերակշռությամբ:

ՍԱՍՈՒՆՅԱՆ Հարություն Մանուկի (ծ. 1950), հաս. գործիչ, հրապարակախոս, հրտ.: 1969-ից՝ ԱՄՆ-ում: 1989-ից՝ Լոս Անջելեսում *Միացյալ հայկական հիմնադրամի* նախագահ, 2000–09-ին՝ «Լինսի» հիմնադրամի փոխնախագահ: 1983-ից՝ *«Կալիֆոռնիա կուրիեր»* շաբաթաթերթի հրտ-խմբ.: Կազմել է «Հայոց ցեղասպանություն. փաստաթղթեր և

հայտարարություններ. 1915–1995» (անգլ., 2005) ժող-ը: ՀԺՄ «Ազդարար» մրց., ԱՄՆ «Էլիս Այլենդ» պատվո շքանշան:

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ, *«Սասնա ծռեր»* էպոսի Դավթի ճյուղի գլխ. հերոսը: Էպոսի ավարտուն, դյուցազն. ու մարդկային հարուստ հատկանիշներով օժտված և առավել արդարամիտ, ազնիվ, վեհանձն հերոս. կերպարն է՝ ծնված նախախնամությամբ և հատուկ առաքելությամբ՝ որպես իր վտանգված հայրենիքի ու ժողդ-ի փրկության հույս ու ապավեն: Ս. Դ. հակապատկերն է իր գլխ. թշնամու՝ նենգ ու փոքրոգի Մսրա Մելիքի, որի դեմ տարած հերոս. հաղթանակով պարտվում են չարն ու անարդարը, հավաստվում հայրենապաշտպան հերոսի փրկարար առաքելությունը և ժողդ-ի հարատևման իրավունքը: Ս. Դ-ի կերպարում կենտրոնացվել և խտացվել են հայ ժողդ-ի ազգ. վիպ. հերոսների լավագույն հատկանիշները:

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ», տանկ. շարասյուն: Ստեղծվել է 1944-ին՝ Սբ Էջմիածնի տրամադրած և սփյուռքահայերի հանգանակած միջոցներով: Մասնակցել է ՀՄՊ-ին: Պատվիրվել է 21 տանկ, որոնց աշտարակներին հայ. գրվել է «Սասունցի Դավիթ»: 1944-ի մայիսին համալրվել է 22 տանկով, գործել է նաև ռազմաճակատի հրամ. Հ. Բաղրամյանի ենթակայության ներքո:

ՍԱՎԱ, Յոն Գրիգորեի (1900–1947), ռումինահայ ռեժ., դրամատուրգ, նկարիչ: Եղել է թատրոնի նորարար ռեժ., բեմանկարիչ, պատրաստել դիմակներ: 1937–38-ին հրատարակել է «Կարիկատուրա» հանդեսը, Յասսիի ազգ. թատրոնում բեմադրել Վ. Շեքսպիրի, Սարդուի, Բ. Նուշիչի և ուր. գործերից: Հեղինակ է «Թատրոնի վերածննդականացումը» աշխ-յան:

ՍԱՎԱ, գետ Սլովենիայում, Խորվաթիայում (մասամբ հոսում է Բոսնիա և Հերցեգովինայի սահմանով) և Սերբիայում, Դանուբի աջ վտակը: Երկ՝ 940 *կմ*, ավազանը՝ 95 հզ. *կմ*, ջրի միջին ծախսը՝ 1670 *մ³/վ*: Նավարկելի է գրեթե 600 *կմ*: Ափերին են Զագրեբ և Բելգրադ ք-ները:

ՍԱՎԱԼԱՆ, **Սերեյան**, հանգած հրաբուխ Հայկ. լ-աշխարհում (Իրանի տարածքում), բարձր-յամբ 2-րդ գագաթը (4811 *մ*)՝ Արարատից հետո: Հս. լանջին կա սառցաղաշտ, հվ. լանջին՝ ծծմբային տաք աղբյուրներ: Գագաթն ամբողջ տարին ձյունածածկ է:

ՍԱՎԱՅԱՆ Անահիտ Եփրեմի (ծ. 1944), նկարչուհի, խեցեգործ: Արմեն *Սավայանի* քույրը, Եփրեմ *Սավայանի* դուստրը: Թեմատիկ-խորհրդանշ. բնույթի խեցեգործ. աշխ-ներով ձևավորել է Հրազդանի ջրէկի (1971), «Նաիրի» (1977), «Սևան» (1978) հյուրանոցների, «Ոսկեվազ» սրճարանի (1986) ինտերիերները, ստեղծել որմնանկարներ, պաննոներ:

ՍԱՎԱՅԱՆ Արմեն Եփրեմի (ծ. 1946), նկարիչ: Անահիտ *Սավայանի* եղբայրը, Եփրեմ *Սավայանի* որդին: Ստեղծել է խորհրդանշ. բնույթի նկարներ («Հուշ», 1999, «Կոմպոզիցիա», «Սատուռն», երկուսն էլ՝ 2000, «Նատյուրմորտ», 2001, «Տեսիլք», 2002, ևն):

ՍԱՎԱՅԱՆ Եփրեմ Մարտիրոսի (1909–1974), նկարիչ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1960): Անահիտ և Արմեն *Սավայանների* հայրը: Հեղինակ է դիմանկարների (Լուսաբեր Ղազարյանի, 1948, Լուսինե Զաքարյանի, 1961, Կոմիտասի, 1969, ևն), թեմատիկ պատկերների («Հ. Թումանյան և զորավար Անդրանիկ», 1969), բնանկարների («Այրիվանք», 1970) ևն:

ՍԱՎԱՆՆԱ (Savannah), գետ ԱՄՆ-ի հվ-արլ-ում: Առաջանում է Տուգալու և Սենեկա գետերի միախառնումից: Երկ.՝ 725 *կմ*, ավազանը՝ 27,2 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 336 *մ³/վ*: Սկիզբ է առնում Ապալաչներից, թափվում Ատլանտ. օվկ-ը: Նավարկելի է Օգաստա ք-ից: Կա ջրէկ:

ՍԱՎԱՆՆԱ, ք. ԱՄՆ Ջորջիա նահց-ում՝ Ատլանտ. օվկ-ի ափերին: Նվինգստո՝ Սավաննա գետի գետաբերանին: Բն.՝ 136,2 հզ. (2010): Մի քանի անգամ ենթարկվել է ջրհեղեղների, որոնց կանխման համար կառուցվել են 5 ջրանցք և մի քանի պոմպակայան: Հիմնադրվել է 1733-ին: Հայտնի է Տելֆեր-պուրակ առանձնատունը (XIX դ.), կան թանգարաններ:

ՍԱՎԱՌՆԱԿ, **ճախրաթիռ, պլաներ** (ֆրանս.՝ planeur – ճախրել), օդից ծանր, անշարժիչ թռչող սարք՝ սավառնման կամ ճախրասավառնման (առանց բարձր-յան կորստի) համար:

ՍԱՎԱՌՆԱԿԱՅԻՆ ՍՊՈՐՏ, ակտիվ հանգստի և սպորտի տեսակ, երբ թռչում են հատուկ անշարժիչ թռչող սարքերով՝ *սավառնակներով*:

ՍԱՎԱՐ (Savart) Ֆելիքս (1791–1841), ֆրանսիացի ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են ձայնագիտ-յան, էլեկտրամագնիսականության, օպտիկայի հարցերին: Էլեկտրադինամիկայի օրենքներից մեկի հեղինակն է (1820, Ժ. Բիոյի հետ՝ Բիո–Ս–ի օրենք):

ՍԱՎԵԼԵՎ–ԴԱՄՈՒՐԻՆ Վասիլի Յակովլևիչ (1886–1965), ռուս. երգիչ (դրամատիկ. տենոր): ՀԽՍՀ ժող. արտիստ (1947): Հանդես է եկել Լենինգրադի, Մոսկվայի, Բաքվի, Պերմի օպեր. թատրոններում, 1940–53-ին՝ ԵՕԲԹ-ի մեներգիչ (Օթելլո, Ռադամես՝ Ջ. Վերդիի «Օթելլո», «Աիդա», Խոսե՝ Ժ. Բիզեի «Կարմեն», ևն):

ՍԱՎԵԼՅԵՎ Վիկտոր Սերգեևիչ (1928–2013), ռուս. վիրաբույժ: ՌԳԱ (1997), ՌԲԳԱ (1974) ակադ.: Սոց. աշխ. հերոս (1988): Ա. Ն. *Բակուլևի* աշակերտը: Աշխ-ները վերաբերում են սրտի, անոթների (այդ թվում՝ աորտայի և երակների պրոթեզավորմանը և վերակառուցող. վիրահատություններին) և որովայն. վիրաբուժությանը:

ԽՍՀՄ (1975), ՌԴ (1992) Պետ. մրց-ներ:

ՍԱՎԻՆ Անատոլի Իվանովիչ (1920–2016), ռուս. ռադիոտեխնիկ: ՌԳԱ ակադ. (1984): Սոց. աշխ. հերոս (1976): Աշխ-ները վերաբերում են ռադիոտեխ. ավտոմատացված տեղեկատվ. համակարգերին, շարժվող օբյեկտների ավտոմատ կառավարմանը ևն: ԽՍՀՄ Պետ. (1946, 1949, 1951, 1981), Լենինյան (1972) մրց-ներ:

ՍԱՎԻՆԻԽ Վիկտոր Պետրովիչ (ծ. 1940), ռուս տիեզերագնաց օդաչու: ԽՄ հերոս (1981, 1985): ՌԳԱ թղթ. անդամ (2006): Որպես բորտինժեներ՝ կատարել է 3 թռիչք (1981, 1985, 1988)՝ 252 օր 17 *ժ* 37 *ր* ընդհ. տևողությամբ, 5 *ժ* եղել է բաց տիեզերքում: Աշխ-ները վերաբերում են հեռազոնդավորման եղանակներին:

ԽՍՀՄ (1989), ՌԴ (1996) Պետ. մրց-ներ:

ՍԱՎԻՉ Պավլե (1909–1994), սերբ ֆիզիկոս և քիմիկոս: Սերբիայի ԳԱ նախագահ (1971–81): ՌԳԱ արտ. անդամ (1958): Աշխ-ները վերաբերում են միջուկ. ֆիզիկային, ցածր ջերմաստիճաններին, բարձր ճնշումներին: Բ. Կիդրիչի անվ. միջուկ. հետազոտությունների ինստ-ի կազմակերպիչ տնօրեն (1947–60):

ՍԱՎԻՑԿԱՅԱ. Սվետլանա Եվգենևնա (ծ. 1948), ռուս. տիեզերագնաց օդաչու: ԽՄ հերոս (1982, 1984): ԽՍՀՄ ս. վ. վ. (1970): Ե. Ց. *Սավիցկու* դուստրը: Կատարել է 2 տիեզ. թռիչք (1982, 1984)՝ 19 օր 17 *ժ* 7 *ր* ընդհ. տևողությամբ, բաց տիեզերքում եղել է (1-ինը՝ կանանցից) 3 *ժ* 14 *ր*:

ՍԱՎԻՑԿԻ Եվգենի Միխայլովիչ (1912–1984), ռուս. ֆիզքիմիկոս և մետաղագետ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1966): Աշխ-ները վերաբերում են դժվարահալ, հազվագյուտ և գունավոր մետաղներին, նոր անօրգ. միացությունների և համաձուլվածքների բաղադրությունների ու հատկությունների համակարգչ. կանխատեսմանը:

ԽՍՀՄ Պետ. (1953, 1968) և ԽՍՀՄ ԳԱ Ն. Ս. Կուրնակովի անվ. (1973) մրց-ներ:

ՍԱՎԻՑԿԻ Եվգենի Յակովլևիչ (1910–1990), խորհրդ. ռազմ. օդաչու: ԽՍՀՄ ավիացիայի մարշալ (1961): ԽՄ հերոս (1944, 1945): Ս. Ե. *Սավիցկայայի* հայրը: ՀՄՊ-ի ժամանակ եղել է կործանիչ ավիադիվիզիայի և ավիակորպուսի հրամ.: Անձամբ ոչնչացրել է 22, խմբով՝ 2 ինքնաթիռ: 1966–80-ին՝ ԽՍՀՄ ՀՕՊ զորքերի գլխ. հրամ.: Լենինյան մրց. (1978):

ՍԱՎՈՅԱ (ֆրանս.՝ Savoie, իտալ.՝ Savoja), պատմ. մարզ Ֆրանսիայի հվ-արլ-ում՝ Սավոյան Ալպերում: Ս-ի տարածքում կազմավորվել են Ս. և Վերին Ս. դեպարտամենտները: Տարածքը՝ 4,9 հզ. *կմ²*, բն.՝ 950 հզ. (1992): Գլխ. ք-ը՝ Շամբերի:

ՍԱՎՉԵՆԿՈ Իգոր Անդրեևիչ (1906–1950), ուկրաինացի կինոռեժ.: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1944): Նկարահանել է «Հարմոն» (1934), «Բոգդան Խմելնիցկի» (1941), «Երրորդ հարվածը» (1948), «Տարաս Շևչենկո» (1951) և այլ ֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942, 1949, 1952-ին՝ հետմահու):

ՍԱՎՉԵՆԿՈ Յակով Ֆեոդորովիչ (1913–1984), ռուս. քիմիկոս: Արտադր-յան կազմակերպիչ: ՌԽՖՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1971, 1983): Նրա ղեկավարությամբ կազմակերպվել է պոլիմեր. կոմպոզիցիաների քիմիայի գիտ. դպրոցն ու ձեռն-ը: Լենինյան մրց. (1976):

ՍԱՎՎԻՆԱ Իյա Սերգեևնա (1936–2011), ռուս. դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1990): 1979-ից՝ ՄԳԱԹ-ի դերասանուհի (Սոնյա՝ «Պետերբուրգյան երազներ»՝ ըստ Ֆ. Մ. Դոստոևսկու, Պոլինա Անդրեևնա՝ Ա. Պ. Չեխովի «Ճայ», Կաբանիխա՝ Ա. Ն. Օստրովսկու «Ամպրոպ», ևն): Նկարահանվել է «Ընկիկով տիկինը», «Ասյա Կլյաչինայի պատմությունը...», «Գարաժ», «Անձնական կյանք» և այլ ֆիլմերում:

ԽՍՀՄ (1983), Վասիլև եղբայրների անվ. ՌԽՖՍՀ (1990) Պետ. մրց-ներ:

ՍԱՎՈՒՂ, Իսրայել-Հուդայի թագավորության հիմնադիրը (մ. թ. ա. XI դ.):

ՍԱՏԱՂ, **Սատալա**, ք. և գվո Փոքր Հայքում՝ Գայլ գետի վերին հոսանքի շրջանում: Մ. թ. ա. II դ-ի վերջին Փոքր Հայքի հետ միացվել է Պոնտ. թագավորությանը, որի անկումից (մ. թ. ա. 66) հետո՝ Հռոմ. կայսրությանը: Այնուհետև խիստ աճել է Ս-ի ռազմավար. նշանակությունը (դարձել է Հռոմի արև. 7 լեգիոնից մեկի բնակատեղին): Եղել է առևտր. հանգուցակետ Մեծ Հայքի և սևծով. քաղաքների միջև: Ս. վերջին անգամ հիշատակվում է 1453-ին: XX դ-ի սկզբին փոքր գյուղ էր Տրապիզոնի նահց-ի Քելքիթ (Գայլ-գետ) գվոկ-ի կազմում:

ՍԱՏԱՆԱ. (հրեերեն՝ խոչընդոտող, զրպարտիչ), հուդայականության և

քրիստոնեության մեջ *դևի* անուններից: Պատկերվել է պոզերով կարմիր մարդուկի տեսքով, որը նստում է զոհի ուսերին ու նրան մղում մեղսագործության:

«ՍԱՏԱՆԻ ԴԱՐ», ստորին հինքարիդար. կայան–բլուր Արտենի (Արտին) լ–ան լանջին (ՀՀ Արագածոտնի մարզի Արեգ գ–ի մոտ): Տես *Արտենի*:

«ՍԱՏԱՆԻ ԽԱՉ» ԼԵՌՆԱՆՁՔ (պատմ.՝ Դուռն Փառիսոսի), Սևանի լ–շղթայում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում: Սևանի ավազանը կապում է Շամքոր գետի հովտին: Հիշատակվում է նաև վրաց. աղբյուրներում:

«ՍԱՏԱՆԻ ԿԱՄՈՒՐՋ», տրավերտիններից կազմված բնական կամուրջ ՀՀ Սյունիքի մարզում (Գորիսի տարածաշրջան)՝ Որոտան գետի վրա՝ Տաթև գ–ից արլ.: Երկ.՝ մոտ 30 *մ*, լայն.՝ 50–60 *մ*: Շրջակայքում կան բազմաթիվ հանք. աղբյուրներ, որոնք առաջացրել են յուրահատուկ շթաքարեր (ստալակտիտներ), «Ս. կ.»–ով է անցնում Գորիս–Տաթև ճանապարհը:

ՍԱՏԱՆԻ ՍՈՒՆԿ, դիվասունկ, բոլետային (Boletacce) ընտանիքի սունկ: Մսկազլխիկի տրամագիծը՝ մինչև 20 *սմ*, վերևից բաց գորշավուն է, խողովակաշերտը՝ դեղնականաչ՝ կարմիր բծերով, միջուկը՝ սպիտակադեղնավուն է: Տարածվել է Եվրոպայում, Հս. Ամերիկայի, Կանադայի սաղարթավոր անտառներում: Շատ վայրերում օգտագործում են սննդի մեջ (եփած):

ՍԱՏԱՆԻԶՄ, *սպրանայի* կրոն. պաշտամունք: Սատանայական պաշտամունքի ընդհանուր բնութագրերից են ծիսականացված բողոքը քրիստ. դավանաբանության և բարոյականության դեմ, *Տերունական աղոթքի*՝ «Հայր մեր»–ի հակառակ ընթերցումը, հակահաս. վարքի տարբեր ձևեր:

ՍԱՏԱՊ, փեզենա, սատապազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի և կիսաթփերի ցեղ: Հայտնի է 7 տեսակ (այլ տվյալներով՝ մոտ 70)՝ հիմնականում Միջերկրծովայքում: Աշակվում են հոտավետ համեմունք. և տեղական Ս–ի տեսակները: Թունավոր է:

ՍԱՏԱՊԱԶԳԻՆԵՐ, երկշաքիլ բույսերի ընտանիքի ծառեր և թփուտներ, հազվադեպ՝ խոտաբույսեր: Հայտնի է 900 տեսակ (150 ցեղ)՝ արևադարձներում և մերձարևադարձներում: Ս–ից են սատապը, թավշածառը, ողկուզակը (կատվատոտիկ) ևն: Կարևոր նշանակություն ունեն պիլոկարպուս և այլ ցեղերի ցիտրուս. մշակաբույսերը, ինչպես նաև դեղաբույսերը: Մի շարք արևադարձ. Ս–ից ստանում են արժեքավոր փայտանյութ:

ՍԱՏԻ (Satie) Էրիկ (1866–1925), ֆրանսիացի կոմպոզիտոր: 1920–ական թթ–ին հիմնադրել է «Արկոյի դպրոց» ստեղծագործ. միավորումը: Հեղինակ է «Շքերթ» (1917) բալետի, «Սոկրատ» սիմֆ. դրամայի (Պլատոնի երկխոսությունների տեքստով, 1918), նվագախմբային, դաշնամուր. և այլ գործերի:

ՍԱՏԻՆ (ֆրանս.՝ satin), բամբակե կամ քիմ. թելերով գործած հարթ, փայլուն երեսով կտորեղեն:

ՍԱՏԻՐԱ, (լատ.՝ satira – զանազան, խառնուրդ), 1. իրականության երգիծ. պատկերման տեսակ, անզիջող ծաղր բարոյական, կենցաղ., քաղ. և այլ կարգի արատների նկատմամբ: Ս–ի ուժը կախված է հեղինակի դիրքորոշումից, երգիծ. միջոցի արդյունավետությունից, որը սոցիալ. նշանակություն ունեցող երևույթի հանդեպ արտահայտում է սարկազմի, հիպերբոլայի, գրոտեսկի, այլաբանության, պարոդիայի ևնի ձևերով: Ս. հանդես է գալիս արվ–ի տարբեր տեսակներում՝ թատրոնում, գրկ–յան մեջ (կատակերգություն), հրապարակախոսության մեջ (պամֆլետ, ֆելիետոն), կերպարվ–ում (ծաղրանկար, շարժ), էստրադայում, կինոյում ևն: Գրկ–յան մեջ Ս. կարող է լինել նաև առակում, վեպում, պատմվածքում և այլ ժանրերի գործերում (տես *Երգիծանք*): Համաշխ. գրկ–յան Ս–ի լավագույն երկեր են ստեղծել Մոլիերը, Ջ. Սվիֆթը, Մ. Ե. Սալտիկով–Շչեդրինը, հայ գրկ–յան մեջ՝ Հ. Պարոնյանը, Ե. Օտյանը, Ե. Չարենցը, Դ. Դեմիրճյանը և ուր.:

2. Հինհռոմ. գրկ–յան մեջ Ս. համարվել է քնարերգության յուրահատուկ ժանրերից, որտեղ ծաղրվել են քաղ., հաս. բարքերը: Հայտնի են հռոմեացի բանաստեղծ *Յուվենալիսի* չափածո Ս–ները:

ՍԱՏԻՐԻԱԶ (հուն.՝ satyriasis – վավաշոտ, հեշտասեր), տղամարդկանց հիվանդագին սեռ. հակումը, որն ուղեկցվում է սեռ. անբավարարվածության մշտ. զգացումով:

ՍԱՏԻՐՆԵՐ, այծամարդիկ, անտառ. աստվածություններ հուն. դից–յան մեջ, *Դիոնիսոսի* շքախմբի պտղաբերության դևերը: Ս. ցանկասեր էին, գինու սիրահար, հավերժահարսների հետ շրջում էին անտառներում, շուրջպար բռնում: Ս–ի մարմինները մազածածկ էին, երբեմն պոչով ու սմբակներով էին: Փխր. իմաստով՝ ցանկասեր, վավաշոտ մարդ:

ՍԱՏՈ Էյսակու (1901–1975), Ճապոնիայի վարչապետ՝ 1964–72–ին, միաժամանակ՝ Լիբերալ–դեմոկրատ. կուս–յան նախագահ: Խաղաղության Նորելյան մրց. (1974):

ՍԱՏՊԱԵՎ Կանիշ Իմանտաևիչ (1899–1964), ղազախ երկրաբան: Ղազ. ԽՍՀ ԳԱ (1946, նախագահ՝ 1946–52 և 1955–ից), ԽՍՀՄ ԳԱ (1946) ակադ.: Աշխ–ները վերաբերում են Ղազախստանի հանքավայրերի երկրբ–յանը և հանք. պաշարներին: ԽՍՀՄ Պետ. (1942), Լենինյան (1958) մրց–ներ:

ՍԱՏՐԱՊ (հուն.՝ satrápës, հին պարսկ–ից), սատրապության կառավարիչ (կուսակալ) հին և վաղմիջնադար. Իրանում, Ալեքսանդր Մակեդոնացու, Սելևկյանների տերություններում: Աքեմենյանների ժամանակ (մ. թ. ա. VI–IV դդ.) Հայաստանում Ս–ի պաշտոնը վարել են *Երվանդունիները*: Փխր. իմաստով՝ դաժան վարչարար, բռնակալ:

ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, Բյուզ. կայսրությանը ենթակա հայկ. ինքնավար իշխանություններ V–VI դդ–ում (Անձիտ, Անգեղ տուն, Հաշտյանք, Ծոփք, Մեծ Ծոփք, Բալահովիտ): *Հուստինիանոս I*–ը վերացրել է (536) Ս. ի.՝ դրանք միավորելով Չորրորդ Հայք նահգ–ի մեջ:

ՍԱՏՐԱՊՈՒԹՅՈՒՆ, *Աքեմենյան պետությունում* ռազմավարչ. միավոր՝ *սատրապի* գլխավորությամբ: Դարեհ I–ը (մ. թ. ա. 522–486) Աքեմենյանների տերությունը բաժանել է 24 Ս–ների: Հայաստանն ընդգրկվել է 13–րդ Ս–յան մեջ: Տես նաև *Սատրապական իշխանություններ*:

ՍԱՏՈՒ ՄԱՐԵ, ք. Ռումինիայի հս–արմ–ում՝ Սոմեշ գետի ափին, համանուն ժուդեցի վարչ. կենտրոնը: Բն.՝ 113 հզ. (2010):

ՍԱՏՈՒՆԻՆԻ ՍԵՎԱԳԼՈՒԽ ՌԻՆԽՈՊԱՀԱՄՈՒՍ (Rhynchocalamus melanocephalus satunini), *Սատունինի կնճիթաձող իկ, լորտոնների* ընտանիքի ոչնխոկալամուս սեռի օձ: ՀՀ–ում հանդիպում է Կոտայքի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում: Վարում է փորող կենսակերպ: Մարմնի երկ.՝ 12–40 *սմ*, պոչը 4,5–5 անգամ կարճ է: Մսվում է մրջյունների թրթուրներով: Մարդու և կենդանիների համար անվնաս է: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՍԱՏՈՒՐՆ (Saturnus), ցանքսի աստվածը հին իտալիկների դից–յան մեջ, հողագործության հովանավորը: Ս–ին համապատասխանում է հուն. *Քրոնոսը*:

ՍԱՏՈՒՐՆ, Երևակ (աստղագիտ. նշանը՝ ♄), Արեգակին. համակարգի 6–րդ մոլորակը, կազմված է գազ. նյութից: Միջին հեռ. Արեգակից՝ 9,58 *ա. մ.*, պտտման պարբերությունը՝ 29,46 տարի, իր առանցքի շուրջ պտույտի պարբերությունը՝ 10 *ժ* 34 *ր*, հասարակած. շառավիղը՝ 60 268 *կմ*, բևեռ. շառավիղը՝ 54 364 *կմ*, զանգվածը՝ $6{,}68 \cdot 10^{26}$ *կգ* (95 Երկրագնդի զանգված): Արեգակին. համակարգի մոլորակներից ամենասեղմվածն է և ունի ամենափոքր խտ–յունը (690 *կգ /մ*^{3}): Մթն–ը կազմված է հիմնականում H_2–ից (մոտ 96 %), He–ից (մոտ 3 %) և այլ (CH_4, NH_3, H_2O) գազերից: Ունի հզոր մագնիս. դաշտ և ճառագայթ. գոտիներ, 62 արբանյակ, որոնցից ամենամեծը (*Տիտան*) չափերով մեծ է *Մերկուրիից*, ինչպես նաև վառ, հարթ, համակենտրոն օղակների համակարգ:

«ՍԱՏՈՒՐՆ» («Saturn»), ամերիկ. երկ– և եռաստիճան տանող հրթիռների սերիա (U–1, –1բ, –5) և նրանց մշակման ծրագիրը: Ստեղծվել են 1964–67–ին՝ «Ապոլոն» տիեզերանավի, «Սկայլաբ» ուղեծրակայանի և ԵԱՄ–ների ուղեծիր դուրսբերման համար: Օգտագործում են հեղուկ վառելանյութ: Մեկնարկ. զանգվածը՝ մինչև 3000 *տ*, օգտ. բեռը՝ մոտ 140 *տ*:

ՍԱՏՈՒՐՆԱԼԻԱՆՆԵՐ (լատ.՝ Saturnalia), *Սատուրն* աստծուն նվիրված ամենամյա (դեկտ–ին) տոնակատարություններ Հին Հռոմում: Ուղեկցվել են տոնախմբություններով և դիմակահանդեսով, աղքատների գումար են բաժանել, միմյանց նվերներ ընծայել:

ՍԱՏՈՒՐՆԻ ՕՂԱԿՆԵՐ, սառույցից և փոշուց բաղկացած հարթ համակենտրոն գոյացություններ Սատուրնի հասարակած. հարթության մեջ: Օղակների հաստությունը (տասնյակ *մ*–երից մինչև մի քանի *կմ*) անհամեմատ փոքր է նրանց լայնությունից (7–80 հզ. *կմ*):

ՍԱՐԱ, (նսարա), նիլո–սահարյան ժողդ: Ապրում են Շարի և Լոգոնի գետերի վերին վտակների ավազանում, Չադի հվ–ում (2,4 մլն, 2010) և Կենտրոնաաֆրիկ. Հանրապետությունում (140 հզ.): Բաժանվում են նահաբայ, սար, գոլայ և այլ խմբերի: Լեզուն՝ կենտր–սուդան. արմ. լեզվաճյուղի սարա խումբ: Կեսից ավելին քրիստոնյա են, մյուսները՝ սուննի մահմեդական և ավանդ. հավատալիքների հետևորդ:

ՍԱՐԱԳԱՏ (Saragat) Ջուզեպպե (1898–1988), Իտալիայի նախագահ՝ 1964–71–ին: Իտալ. սոց. շարժման առաջնորդներից: 1947–63–ին (ընդհատումներով)՝ Իտալիայի ս–դ. կուս–յան քաղ. քարտուղար, 1984–ից՝ նախագահ: 1947–49 և 1954–57–ին՝ փոխվարչապետ:

ՍԱՐԱԳՈՍՍՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Իսպանիայի հնագույն համալսարաններից: Հիմնադրվել է 1583–ին: 2016–ին ուներ ավելի քան 40 հզ. ուսանող:

ՍԱՐԱԵՎՈ (Sarajevo), Բոսնիա և Հերցեգովինայի մայրաքաղաքը (1946–ից): Բն.՝

309,4 հզ. (2010): Ունի օդանավակայան, համալսարան, Գիտ–յան և արվ–ի ակադ., թանգարան, պատկերասրահ: Որպես քաղաք հիշատակվում է 1244–ից՝ Վրիբոս անվամբ (1507–ից՝ Ս.): 1918–ի դեկտ–ից՝ սերբերի, խորվաթների, սլովենների թագավորության կազմում (1929–ից՝ Հարավսլավիայի): Կան եկեղեցի (XV դ.), մզկիթ և մեդրեսե (XVI դ.): 1914–ին Ս–ում են սպանել Ավստրո–Հունգարիայի գահի ժառանգորդ Ֆրանց Ֆերդինանդին (տես ***Սարաևոյի սպանություն***), որն ԱՀՊ–ի պատճառ է դարձել: 1984–ին Ս–ում անցկացվել են XIV օլիմպ. ձմեռ. խաղերը:

ՍԱՐԱԵՎՈՅԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ, Ավստրո–Հունգարիայի գահի ժառանգորդ Ֆրանց Ֆերդինանդի և նրա կնոջ սպանությունը (28.06.1914) «Երիտասարդ Բոսնիա» գաղտնի կազմ–յան անդամների ձեռքով ***Սարաևո*** ք–ում: Ավստրո–Հունգարիան և Գերմանիան Ս. ս. օգտագործել են որպես առիթ՝ սկսելու ԱՀՊ:

ՍԱՐԱՄԱԳՈ, **Սարամագու** (Saramago), Ժոզե (1922–2010), պորտուգալացի գրող: Հեղինակ է «Գուցե դա ուրախություն է» (1970) և բանաստեղծությունների այլ ժող–ների, գյուղ. կյանքը պատկերող «Գետնից բարձրացողը» (1970), «Հիշողություններ մենաստանի մասին» (1982) վեպերի, «Քարե լաստանավակ» (1986), «Կուրություն» (1995), «Բոլոր անունները» (1997), «Կայեն» (2009) և այլ առակ–վեպերի: «Ավետարան ըստ Հիսուսի» (1991) վեպում ներկայացրել է սրբազան թեմայի նոր տարբերակը, որի հիմքում Քրիստոսի և Հայր Աստծու բախման գաղափարն է: Նոբելյան մրց. (1998):

ՍԱՐԱՅ ԲԱԹՈՒՀ (Հին Սարայ), միջնադար. (1254–1480 թ., *Ոսկե Հորդայի* 1–ին մայրաքաղաքը: Ավերակներն Աստրախանի մարզում են:

ՍԱՐԱՅ ԲԵՐՔԵ (Նոր Սարայ), միջնադար. (մոտ 1260–1395 թ., *Ոսկե Հորդայի* մայրաքաղաքը՝ XIV դ–ի 1–ին կեսից (հիմնադրել է Բերքե խանը): Ավերակները ՌԴ Վոլգոգրադի մարզում են:

ՍԱՐԱՅԻ ԼԵՌՆԱՆՁՔ, Կոտուրի (Վասպուրական) կենտր. մասում՝ Թուրքիայի և Իրանի սահմանին՝ Արճակ և Կոտուր գետերի վերնագվո–ներում: Բարձր.՝ 2450 *մ*: Վանա լճի ավազանը միացնում է Կոտուրի հովտին (Արաքսի ավազան): Ս. լ–ով անցնում է Արճակ–Սարայ–Խոյ ճանապարհը: Ձմռանը փակվում է:

ՍԱՐԱՆՍԿ, ք. ՌԴ–ում, Մորդովյա վարչ. կենտրոնը՝ Ինսար գետի ափին: Բն.՝ 286,1 հզ. (2009): Երկթղ. կայարան է: Ունի համալսարաններ, թատրոններ (Ռուս. դրամատիկ., Մորդով. ազգ. դրամատիկ.), պատկերասրահ, թանգարաններ (այդ թվում՝ քանդ. Ս. Դ. Էրզի): Հիմնադրվել է 1641–ին: Ս–ում են Հովհաննես Բարեպաշտի եկեղեցին (XVII դ–ի վերջ), քարաշեն պալատներ (նաև Պուգաչովյան պալատը):

ՍԱՐԱՊՅԱՆ Էդուարդ Ավետի (1918–1984), ճարտ.: ՀԽՍՀ վաստ. շինարար (1959), վաստ. ճարտ. (1968): Համահեղինակ է «Արմենիա» հյուրանոցի (1956), Արհեստակց. միությունների տան համալիրի (1957), Թանգարանների շենքի (1950–81, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1970), Կոմպոզիտորների տան (1957), Հանրախանութի (այժմ՝ «Տաշիր», 1977, ԽՍՀՄ ԺՏՆՅ արծաթե մեդալ՝ 1978), Կենտր. փոստատան (1978, բոլորը՝ Երևան), Էջմիածնում՝ Առևտրի կենտրոնի (1976) նախագծերի:

ՍԱՐԱՋԵՎ, Գեորգի Վարդի (1919–1986), դաշնակահար, մանկավարժ, կոմպոզիտոր: Պրոֆ. (1966): ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1974): Հեղինակ է դաշնամուր. պիեսների (Տրիո, «Էքսպրոմտ», «Երգեր առանց խոսքի» ևն), համահեղ.՝ «Դաշնամուրի ձեռնարկ»–ի (h. 1, 2, 1973, 1978): Աշակել է հայկ. ժող. և աշուղ. երգեր:

ՍԱՐԱՋԵՎ (Սարաջյան) Կոստանդին Սողոմոնի (1877–1954), ջութակահար, դիրիժոր, մանկավարժ, հաս. գործիչ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1945): Հայաստանի աշխ. հերոս (1921): Մոսկվայի (1922–35) և Երևանի կոնսերվատորիաների (1936–54) պրոֆ:. Դոնի Ռոստովում հիմնադրել է սիմֆ. նվագախումբ և օպեր. թատրոն: 1924–35–ին՝ սիրող. սիմֆ. նվագախմբի (1926–ից՝ Ս–ի անվ.) ղեկ.: 1935–39–ին՝ ԵՕԲԹ–ի գլխ. դիրիժոր, 1941–ից՝ Հայաստանի սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր:

ՍԱՐԱՍԱՏԵ, **Սարասատե ի Նավասկուես** (Sarasate y Navascués), Պաբլո դե (1844–1908), իսպանացի ջութակահար, կոմպոզիտոր: Հանդես է եկել հիմնականում իր հիմնադրած քաոյակում (1860–ական թթ., Փարիզ): Առավել հաջողությամբ կատարել է սեփ. ստեղծագործությունները՝ «Գնչուական մեղեդիներ» (1878), ֆանտազիաներ՝ օպերաների թեմաներով և այլ գործեր:

ՍԱՐԱՎԱՆԴ, բարձրադիր հարթավայր՝ հարթ կամ ալիքաձև, թույլ մասնատված մակերևույթով, որը սանդղափուլերով սահմանազատվում է հարևան ավելի ցածր հարթավայրերից: Տարբերում են կառուցվածք., հրաբխ. կամ լավային, դենուդացիոն, լեռն. Ս–ներ:

ՍԱՐԱՏՈՎ, ք. ՌԴ–ում, համանուն մարզի վարչ. կենտրոնը, նվ֊նգստ Վոլգայի ափին: Բն.՝ 831 հզ. (2009): Հիմնադրվել է 1590–ին: Ս–ում ապրում է շուրջ 8,8 հզ. հայ (2010):

ՍԱՐԱՏՈՎԻ ՄԱՐԶ, վտմ ՌԴ Մերձվոլգյան դաշն. օկրուգում: Տարածքը՝ 101,2 հզ. *կմ*^{2}, բն.՝ 2,5 մլն (2016): Վարչ. կենտրոնը՝ *Սարատով*: Ունի 38 շրջան, 18 քաղաք, 27 քտա: Կազմավորվել է 1936–ին: Գլխ. գետը Վոլգան է: Գործում է Խավալինի ազգ. պարկը:

ՍԱՐԱՖԱՆՈՎ, Գենադի Վասիլևիչ (1942–2005), ռուս տիեզերագնաց օդաչու (1974): ԽՄ հերոս (1974): Գնդ. (1974): Տեխ. գիտ. թեկնածու (1978): Կատարել է 1 թռիչք (1974)՝ «Սոյուզ–15» տիեզերանավով: *Թռիչքի ընդհ. տևողությունը՝ 2 օր 14 ր 11 վ:*

ՍԱՐԱՖՅԱՆ Ավետիս Հարությունի (ծ. 1937), քանդ., նկարիչ: Ստեղծել է Հ. Մնձուրու, Մ. Մնակյանի, Հ. Պարոնյանի, Մ. Զարիֆյանի և ուր. կիսանդրիները, Վազգեն Ա. կաթողիկոսի, Կոմիտասի դիմանկարները, նաև «Խաղաղություն», «Կովկասցիներ» գեղանկարները: Իսպանիայի Կառ–յան (1972), Վատիկանի պատրիարքարանի Գեորգ II (2001), I կարգի պատվո (2002) շքանշաններ:

ՍԱՐԱՖՅԱՆ Մովսես Բունիաթի, XVIII դ–ի հայ ազատագր. շարժման գործիչ: Աստրախանի մեծահարուստ Ս. 1769–ի հունիսի 8–ին Ռուսաստանի Կառ–յանն է ներկայացրել Հայաստանի ազատագրության ծրագիր. Իրանի և Թուրքիայի դեմ ռուս–վրաց–հայկ. միացյալ ուժերի հաջող պատերազմի ավարտից հետո Ռուսաստանի հովանու ներքո պետք է վերականգնվեր հայկ. պետականությունը, և նշանավոր հայերից մեկը դառնար Հայաստանի թագավոր կամ իշխան:

ՍԱՐԱՖՅԱՆ Նիկողոս (1902–1972), գրող, հրապարակախոս: 1923–ից՝ Փարիզում: Հեղինակ է «Անջրպետի մը գրաւումը» (1928), «Տասնչորսը» (1933), «Տեղատուութիւն եւ մակընթացութիւն» (1939), «Միջնաբերդ» (1946), «Միջերկրական» (1971), «Չափածոյ երկ» (1982), «Լոյսի ցաւեր» (2000) բանաստեղծությունների ժող–ների, «Իշխանուհին» (1934) վիպակի, «Վենսենի անտառը» (1988) արձակ գործի:

ՍԱՐԱՖՅԱՆ Սարգիս (Սարգիս արք. Կոստանդնուպոլսեցի, 1699–1773), եկեղեց. գործիչ, տպագրիչ: 1747–ին Վենետիկում համագործակցել է Անտոնի Բորտոլիի հետ, նրա տպարանում մինչև 1752–ը հրատարակել է 15 անուն կրոն. բնույթի գրքեր: 1752–ին տպագրել է Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոցը» և «Աշխարհագրութիւնը» (1 գրքով):

ՍԱՐԳԱՆԵԼԱԿՆԵՐ (Beloniformes), սարգանակերպների կարգի ձկների ընտանիք: Երկ.՝ 30 *սմ*–1,8 *մ*: Հայտնի է ավելի քան 30 տեսակ՝ արևադարձ., մերձարևադարձ., հազվադեպ՝ բարեխառն ծովերի առափնյա ջրերում: Արդյունագործ. ձուկ է:

ՍԱՐԳԱՍՅԱՆ ԾՈՎ, Ատլանտ. օվկ–ի մաս՝ մերձարևադարձ. լայն–յուններում՝ Կանարյան, Հս. պասսատային, Հս. ատլանտ. և Գոլֆստրիմ հոսանքների միջև: Մակերեսը՝ 6–7 մլն *կմ*^{2} (սահմանները պայմանական են հոսանքների սեզոն. փոփոխությունների պատճառով): Խոր.՝ 7110 *մ*: Անվանումն ստացել է իր մակերևույթին լողացող սարգաս. ջրիմուռների կուտակումներից:

ՍԱՐԳԻՈՍ, **սուրբ Սարգիս Զորավար, Մար Սարգիս, տեր Սերգիոս** (ծ. թ. անհտ – 362/363), վկա՝ դասված հայազգի սրբերի կարգը. օժտված է «արագահաս», «բարեխոս», «շնորհատու» հատկանիշներով: Ըստ Հայսմավուրքների՝ ազգությամբ «հոռվմ» էր (հույն): Հալածվելով *Հոլիանոս Ուրացող* կայսրից՝ Ս. ապաստանել է Հայաստանում, ապա անցել Պարսկաստան, որտեղ հրաժարվելով ուրանալ Հիսուսին և ընդունել զրադաշտ. կրոնը՝ գլխատվել է: Հայ մանրանկարչության մեջ Սբ Ս. պատկերվել է ճերմակ նժույգի վրա, զինավառ կերպարանքով, հաճախ՝ վիշապ օձին նիզակահարելիս: Հայաստանում Սբ Ս–ի անունով կան մի շարք եկեղեցիներ:

ՍԱՐԳԻՈՍ, VII դ–ի գուսան: Ս–ի համբավը տարածված էր հատկապես Մերձ. Արևելքում: Երգել է պարսկ. արքունիքում, մասնակցել երաժշտ. մրցույթների: Կարգավորել և վավերացրել է արլ. երաժշտության տեսական–գեղագիտ. սկզբունքները (VII դ–ի սկիզբ, Տիզբոն):

ՍԱՐԳԻՍ (Զաբունյան Սարգիս, ծ. 1938), նկարիչ: Ստեղծագործել է կոնցեպտուալ արվ–ի բնագավառում. «Ռազմական գանձ» (1978, կոմպոզիցիա), «Հիշողություն» (1971), «Փոթորկի դրամա» (1973), «Դարի վերջն ու դարասկիզբը» (1982), «Դարբինը և հանքափորը» (1984) և այլ գործերում օգտագործել է ջրաներկ, յուղաներկ, մետաղե ձողեր, կենցաղ. իրեր, քանդակներ ևն:

ՍԱՐԳԻՍ Ա ՍԵՎԱՆՑԻ (ծ. թ. անհտ–1022), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 992–1019–ին: Ս. Ա Ս–ու օրոք կաթողիկոս. աթոռն Արգինայից տեղափոխվել է Անի՝ նորակառույց Կաթողիկե (Մայր տաճար) եկեղեցի: Պայքարել է *թոնդրակեցիների* դեմ:

Ծեր հասակում ինքնակամ հրաժարվել է կաթողիկոս. աթոռից և իր ձեռքով կաթողիկոս օծել *Պետրոս Ա Գետադարձին*:

ՍԱՐԳԻՍ Ա ՎԱՀՐԱՄՅԱՆ, Սարգիս Թմոգվեցի (մոտ 1160–մոտ 1210), քաղ. և ռազմ. գործիչ՝ Զաքարյանների *Վահրամյան* տոհմածյուղից: Սարգիս Զաքարյանի եղբայր Վահրամի որդին: Մասնակցել է (1187) Դվինի ամիրության դեմ Զաքարյանների արշավանքին, Վրաց Թամար թագուհու դեմ Գեորգի Ռուսի (թագուհու 1-ին ամուսինը) ապստամբության (1191) ճնշմանը: Թամարից ստացել է Թմոգվին (տես *Թմկաբերդ*), ապա եղել է *Զավախքի* կուսակալը: Մի շարք ուսումնասիրողներ Ս. Ա. Վ.-ին նույնացնում են բանաստեղծ և թարգմանիչ Սարգիս Թմոգվեցու հետ:

ՍԱՐԳԻՍ ԱԲԵՂԱ, XVI դ–ի ճանապարհորդ–ուղեգրող: Երզնկայից մեկնել է Կ. Պոլիս, որտեղից էլ սկսել է իր 6–ամյա ճանապարհորդությունը (1587–92) Եվրոպայում: Այցելել է 1000 բերդ ու քաղաք, 4000 եկեղեցի, 5000 վանք, 8000 կուսանոց: Թողել է «Ուղեգրութիւն» ձեռագիրը (Մտնդ., ձեռ. № 9832):

ՍԱՐԳԻՍ ԱՊՈՒՀԵԽՅԻ, Սարգիս Ակնեցի, XVII դ–ի վերջ–XVIII դ–ի սկզբի տաղասաց: Ս. Ա.–ու կյանքի և ստեղծագործության մասին միակ տեղեկությունը պահպանված է Մտնդ–ի № 4426 ձեռագրում (Տաղարան), որը 1765–ին ընդօրինակել է Հայրապետ Ագուլեցին. այլ տաղերգուների գործերից բացի՝ այստեղ ընդգրկված են Ս. Ա.–ու 18 տաղերը և մի ակրոստիքոս: Գրել է նաև հոգևոր երգեր:

ՍԱՐԳԻՍ Բ ԱՋԱՏԱՐ (ծ. թ. անհտ–1474), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1469–ից: «Աջատար» է կոչվել 1460–ին Լուսավորչի Աջը Սբ Էջմիածնից հափշտակելու և Թավրիզ տանելու համար: Կաթողիկոս ընտրվելուց հետո փորձել է վերադարձնել Աջը, որը *Զաքարիա Գ* տարել էր Աղթամար, սակայն այն Սբ Էջմիածին է բերվել միայն Ս. Բ Ա.–ի հաջորդի՝ *Հովհաննես Է Աջակրի* օրոք:

ՍԱՐԳԻՍ Բ ՀԱՄԱՆ–ՋԱԼԱԼՅԱՆՑ (ծ. թ. անհտ–1828), Աղվանից (Գանձասարի) կաթողիկոս՝ 1810–15–ին, ապա՝ Արցախի թեմի մետրոպոլիտ: Ամենայն հայոց կաթողիկոսության ենթակայությունից դուրս գալու հակվածության համար արք. Ներսես Աշտարակեցին ցար. կառ–յան միջոցով վերացրել է Աղվանից կաթողիկոսությունը՝ Արցախի թեմին վերապահելով մետրոպոլիտության իրավունք:

ՍԱՐԳԻՍ Բ ՎԱՀՐԱՄՅԱՆ, Սարգիս Թմոգվեցի, XIII դ–ի իշխան, քաղ. գործիչ, դիվանագետ: *Սարգիս Ա. Վահրամյանի* թոռը: Ընդունելով մոնղ. գերիշխանությունը (1230–60–ական թթ.)՝ պահպանել է իր տիրույթներն ու իշխանությունը Թմոգվիում (*Թմկաբերդ*): Նրա ջանքերով Գեորգի Լաշայի որդի Ուլու Դավիթը Մանգու խանից ստացել է Արլ. Վրաստանի գահը: Վրացի պատմիչները Ս. Բ Վ.–ին անվանել են «այր գիտուն և փիլիսոփա – ճարտասան»: Որոշ վրացագետներ Ս. Բ Վ.–ին են համարել (ոչ թե Սարգիս Ա Վահրամյանին) «Դիլարգեթիանի» պոեմի հեղինակ և «Վիս և Ռամին» ստեղծագործության վրաց. թարգմանիչ:

ՍԱՐԳԻՍ Գ ՄՅՈՒՍԱՅԼ (ծ. թ. անհտ–1515), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1484–ից: 1476–ից եղել է աթոռակից և այդ շրջանի մյուս կաթողիկոսների նման մի քանի աթոռակիցներ ունեցել:

ՍԱՐԳԻՍ Դ ՎՐԱՍՏԱՆՑԻ (ծ. թ. անհտ–1536), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1520–ից: Եղել է Վիրահայոց թեմի առաջնորդ: Ս. Դ Վ.–ու օրոք վերսկսվել են թուրք–պարսկ. պատերազմները, և հոգևոր–մշակութ. ու շին. ձեռնարկումներից առավել նրա խնդիրը Մայր աթոռը վերահաս վտանգներից պահպանելն էր:

ՍԱՐԳԻՍ ԶԱՔԱՐՅԱՆ, Սարգիս Մեծ (ծ. թ. անհտ–1187), իշխան, ռազմ. և քաղ. գործիչ: *Զաքարյանների իշխանապետության* հիմնադիրը: *Զաքարե Բ Մեծի* և *Իվանե Ա*–ի հայրը: 1161–ին, երբ հայ–վրաց. միացյալ ուժերը *Շադդադյաններից* ազատագրել են Անին, Ս. Զ. եղել է Անիի կառավարիչ Իվանե Օրբելու տեղակալը: 1881–ին՝ հայ–վրաց. բանակի հայկ. զորախմբի ամիրսպասալար, 1885–ին՝ Վրաց թագավորության ՋՈՒ–ի ընդհ. զորահրամ., ստացել է այդ պաշտոնը վարողին հատկացվող Լոռին, որն այնուհետև ճանաչվել է Զաքարյանների ժառանգ. տիրույթը:

«ՍԱՐԳԻՍ ԽԱՉԵՆՑ», հրտչ–յուն, հիմնադրվել է 1993–ին Երևանում: Հիմնադիր–տնօրենն՝ Սերգեյ Խաչիկօղլյան: Լույս է ընծայում ժամանակակից հայ և օտարազգի գրողների, արվեստագետների երկեր և այլ բնույթի գրկ.:

ՍԱՐԳԻՍ ՄՈՒԿԱՅԻ, Մազմա (մոտ 1520–1530–ական թթ.–1602), գրիչ, մանրանկարիչ: Ապրել և ստեղծագործել է Մոկաց գվո–ի Բոլնից գ–ում: Մտնդ–ում են պահվում նրա 1579, 1592, 1594 և 1595–ին նկարազարդած ձեռագրերից, XVI դ–ի 5 Ավետարան և 1593–ի 1 Գանձարան, որոնք հարուստ են գծի և գույնի արտահայտիչ համադրությամբ նկարազարդումներով:

ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Սարգիս Մեկնիչ, XII դ–ի մատենագիր: Գործել է Սև լ–ան Քարաշիթի վանքում (Կիլիկիա), հետևել Գրիգոր Նազիանզացու, Բարսեղ Կեսարացու, Եփրեմ Ասորու գր. ավանդույթներին: Հեղինակ է ճառերի, խրատների, աստվածաբան. երկերի, մեկնությունների («Մեկնութիւն Կաթողիկեայց», Մտնդ., ձեռ. № 5321, 6195):

ՍԱՐԳԻՍ ՊԻԾԱԿ, XIV դ–ի 1–ին կեսի մանրանկարիչ, գրիչ, կիլիկյան գրքարվ–ի վարպետ, *Կիլիկիայի մանրանկարչության դպրոցի* խոշոր ներկայացուցիչ: *Գրիգոր Պիծակի* որդին: Ձեռագրերում պատկերել է ժամանակակիցների, պատմ. անձանց, հայտնի է 3 ինքնանկար: Մեծ մասամբ ծաղկել է Ավետարաններ: «Ութ մանրանկարիչների Աւետարան»–ը (1320, ձեռ. № 7651), «Բժշկութեան Աւետարան»–ը (1353, ձեռ. № 6795, երկուսն էլ՝ Մտնդ.) հարուստ են մանրանկարներով: Որոշ Ավետարաններ ձևավորել է գրաֆիկ. պատկերներով, մյուս ձեռագրերը (Աստվածաշունչ, Անտիոքի օրինագիրք, Մանրուսում, Հայսմավուրք, Սաղմոսարան ևն)՝ ուղղանկյուն գլխազարդով, լուսանցազարդերով: Վերջին գործը Շարակնոցն է (Նյու Յորքի հանր. գրադարան, Սպենսերի հավաքածու, ձեռ. № 2)՝ թվագրված 1365–73–ով: Ս. Պ. ծաղկել է 40 մատյան. 11–ական ձեռագրեր պահվում են Երևանի, Երուսաղեմի մտնդ–ներում, մյուսները՝ Փարիզում, Վենետիկում, Նյու Յորքում, Դուբլինում և այլուր: Գործերին բնորոշ են հարթապատկեր. ոճը, վառ գույները, պարզ կերպավորումները:

ՍԱՐԳԻՍ ՋԱԼԱԼՅԱՆՑ, Սարգիս արքեպիսկոպոս Զալալյանց (1810–1879), հոգևորական՝ Խաչենի Հասան–Զալալյանների տոհմից: 1855–ին ձեռնադրվել է եպս., 1857–ին՝ արք.: 1857–63–ին՝ Վրաստանի և Իմերեթիայի, 1865–75–ին՝ Արցախի թեմերի առաջնորդ: Հրատարակել է «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» (մաս 1, 2, 1842, 1858) գիրքը: Ս. Զ.–ի մի շարք ձեռագիր աշխ–ներում շարադրված են Ուտիք և Արցախ նահգ–ների աշխարհագրությունը, իշխան–նախարար. տների տոհմաբանությունն ու պատմությունը: Արժեքավոր են նաև Արլ. Հայաստանի մելիքություններին, թուրք և պարսիկ բռնակալների դեմ նրանց պայքարին նվիրված ձեռագրերը: Ս. Զ. հայ հոգևոր, մշակութ. և կրթ. օջախներին կտակել է 25 հզ. ռ. գումար, որը պետք է օգտագործվեր 125 տարի հետո՝ 2005–ին, երբ կհասներ 12 մլն–ի:

ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՊՐԱԿՈՒՆԵՑԻ, Սարգիս Բարունապետ (ծ. թ. անհտ–1401), ուսուցչապետ, հոգևոր և մշակույթի գործիչ: Սովորել է Գլաձորից Հերմոնի վանք տեղափոխված համալսարանում: 1369–ին ձեռնադրվել է վրդ., սաների մի մասի հետ հաստատվել Երնջակ գվո–ի Ապրակունյաց վանքում, պայքարել Քռնայի միարար. դպրոցի դեմ, գործակցել *Հովհան Որոտնեցու* հետ: 1379–ին հիմնադրել է Աստապատի դպրոցը, որտեղից 1388–ին Քաջբերունքի Խառաբաստա Սբ Աստվածածին վանք է տեղափոխել վարդապետարանը, ծավալել ուսումնագիտ. բուռն գործունեություն: Աշակերտներից են *Թովմա Մեծոփեցին, Գրիգոր Խլաթեցին, Կիրակոս Ա Վիրապեցին* և ուր.: Հայտնի են Ս. Վ. Ա.–ու խմբագրած «Մեկնութիւն գործոց առաքելոց», «Մեկնութիւն Յոհաննու Աւետարանին» աշխ–ները:

ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԿԱՐԻՉ, XIV դ–ի քանդ.: Գործերը պահպանվել են ՀՀ Արարատի մարզի Լուսաշող գ–ին մերձակա Սբ *Հովհաննես Կարապետ վանքի* Սպիտակավոր Սբ Աստվածածին եկեղեցու (1301, ճարտ.՝ *Բուտ*) ճակատաքարին («Աստվածածինը, մանուկ Հիսուսը և հրեշտակները», բարձրաքանդակ): Նրան է վերագրվում նաև գլխ. եկեղեցուն մոտիկ սալաքարի վրայի բարձրաքանդակը (ճանկերում գառ բռնած կիսաքաց թևերով արծիվ):

ՍԱՐԳԻՍ ՏԻԲՐՈՒՆԻ (Քետերյան Սարգիս, 1898–1929), քաղ. գործիչ, խմբ.: ՍԴՀԿ անդամ: Աղանայում՝ «Տաւրոս» (1919–20), «Նոր սերունդ» (1919–21), Հալեպում՝ «Սուրիական մամուլ» (1922–27) պարբ–ների խմբ.: Կիլիկիան թուրքերին հանձնելուց հետո ակտիվ պայքար է սկսել ֆրանս. գաղութատիրությունից Սիրիան և Լիբանանն ազատելու համար, որի պատճառով ֆրանս. իշխանությունները ձերբակալել են և աքսորել: Աքսորից հետո՝ 1928–ին տեղափոխվել է Բեյրութ, շարունակել հաս–քաղ. գործունեությունը, զբաղվել նաև ուսուցչությամբ: Սպանել են քաղ. հակառակորդները: ՍԴՀԿ–ի մի շարք ուսանող. միություններ, նաև ՀՀ–ում կոչվել են Ս. Տ–ու անունով:

ՍԱՐԳԻՍ ՈՒՍՏԱ, XVII դ–ի ճարտ.: 1691–ին կառուցել է *Երից Սանկանց վանքի* եկեղեցին: Իր աշակերտների՝ Հերապետի, Դավթի, Յեսուի և Կարապետի հետ նորոգել է Սանահինի վանքի Սբ Գրիգոր, Սբ Աստվածածին, Ամենափրկիչ եկեղեցիները, գրատունը, զանգակատունը:

ՍԱՐԳԻՍ ՓԱՌՇԻԿ (պարսկ.՝ փառշիկ – նկարիչ), **Փարջիկ**, XII դ–ի վերջ–XIII դ–ի սկզբի որմնանկարիչ: Անիի Սբ *Փրկիչ եկեղեցու* որմնապատկերներում պահպանվել է նկարչի ինքնանկարը (1193), որն առայժմ հայտնի ինքնագոյն օրինակներից է հայ արվ–ում: Նրան են պատկանում նաև Փրկչի մեծադիր պատկերը, ավետարանիչների պատկերները, «Խորհրդավոր ընթրիքի» հորինվածքը ևն: Սանահինում պահպանված «Սարգիս որ է Փարջիկ» մակագրությամբ XIII դ–ի տապանաքարը հավանաբար Ս. Փ–ի շիրմաքարն է:

ՍԱՐԳԻՍԲԵԿՅԱՆ Օվսաննա Սմբատի (1897–1986), դերասանուհի: Ադրբ. ԽՍՀ վաստ. արտիստ (1957): 1936–ից՝ Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվ. դրամատիկ. թատրոնի դերասանուհի (Գերտրուդ՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», Լեդի Միլֆորդ՝ Ֆ. Շիլլերի «Սեր և խարդավանք», Գալչիխա՝ Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», Ռոզալիա՝ Շիրվանզադեի «Պատվի համար», Սանամ, Զառնիշան՝ Շիրվանզադեի «Նամուս», «Չար ոգի», ևն):

ՍԱՐԳԻՍՅԱՆ Բարսեղ (1852–1921), բանասեր, հայագետ, ձեռագրագետ, մատենագետ: ՎնտՄՄ անդամ: Ագաթանգեղոսի «Պատմութիւն»–ը համարել է տարբեր հեղինակների գրած և V դ–ում ի մի բերված երկերի, Անանիա Շիրակացուն վերագրվող «Ժամանակագրութիւնը»՝ մի քանի ժամանակագր. երկերի ժող.: Հեղինակ է նաև «Տեսութիւն Սեդրեստրոսի պատմութեան եւ Մ. Խորենացւոյ աղբերաց»–ի (1893), «Ուսումնասիրութիւն Մանիքէա–Պաւղիկեան թոնրակեցիներու աղանդին եւ Գր. Նարեկացւոյ թուղթը» (1893), «Երկհարիւրամեայ գրականական գործունէութիւն եւ նշանաւոր գործիչներ Վենետկոյ Մխիթարեան միաբանութեան» (1905), «Հայկական հարցը խաղաղութեան ժողովին առջև…» (1919) և այլ աշխ–ների: Կազմել է «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ» (հ. 1–3, 1914–66, հ. 3–ը՝ համահեղ.) ձեռագրացուցակը:

ՍԱՐԳԻՍՅԱՆ Ժորժ (1915–1982), դերասան, ռեժ., թարգմանիչ: 1941–ից՝ Բեյրութի «Իփեկյան թատերախմբի» հիմնադիր–դերասաններից, 1952–80–ին՝ ղեկ.: Իր բեմադրություններում խաղացել է գլխ. դերեր (Վանահայր՝ Լ. Շանթի «Հին աստվածներ», Դոկտոր Շտոկման՝ Հ. Իբսենի «Դոկտոր Շտոկման», Քաղաքագլուխ՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», ևն): 1984–ին, ի հիշատակ Ս–ի, Բուենոս Այրեսում հիմնադրվել է «Ժորժ Սարգիսյան» թատերախումբը:

ՍԱՐԳԻՍՅԱՆ Ներսես (աշխարհիկ անունը՝ Սարգիս, 1800–1866), բանասեր, աղբյուրագետ: ՎնտՄՄ անդամ: Մինչև 1843–ը ղեկավարել է միաբանության տպարանը, մասնակցել «Մատենագիրք նախնյաց» մատենաշարի հրատարակմանը: Շրջագայել է Հայաստանում և հարակից երկրներում, հավաքել հայ. մեծարժեք ձեռագրեր, հնագիտ. իրեր, դրամներ, հայ., հուն., վրաց., արաբ. և այլ լեզուներով բազմաթիվ վիմագիր հիշատակարաններ: Հեղինակ է «Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս» (1864), «Հայկական արձանագրությունները Կարսում, Անիում և վերջինիս շրջակայքում» (ռուս., 1881) աշխ–ների, «Վարք սրբոց հարանց...» (հ. 1–2, 1855) մատենագր. երկի:

ՍԱՐԳԻՍՅԱՆ Օննիկ Սարգսի (1914–1992), մանկավարժ, խմբ., գրականագետ: Եղել է Քեսաբի Սեն Ժոզեֆ, Հալեպի Կիլիկյան, Բեյրութի Դեմիրճյան վարժարանների տնօրեն: 1953–56–ին՝ *«Նուիրում»* պարբերաթերթի, 1956–91–ին՝ *«Շիրակ»* ամսագրի հիմնադիր–խմբ.: Կազմել է դասագրքեր: ՀԽՍՀ լուսավորության նախյան «Մեսրոպ Մաշտոց» շքանշան (1986):

ՍԱՐԳԻՍՄՈՎ Աշոտ Առաքելի (ծ. 1924), խորհրդ. ՌԴՆ փոխծովակալ–ճարտարագետ (1978): Տեխ. գիտ. դ–ր (1968), պրոֆ. (1969): ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1981): ՀՄՊ–ի ժամանակ 85–րդ ծով–հրաձգ. բրիգադի կազմում կռվել է Լենինգրադի և Կարելիայի ճակատներում: Աշխ–ները վերաբերում են նավաշինության ասպարեզում միջուկ. էներգետիկայի կիրառմանը, նավային էներգատեղակայանքների հուսալիության բարձրացմանը:

ՌԴ Կառ–յան (2013), «Գլոբալ էներգիա» միջազգ. (2014) մրց–ներ, ԽՍՀՄ Կարմիր աստղի (1944, 1956, 1982), ՀՄՊ 1–ին (1944) և 2–րդ (1985) աստիճանների, «Պատվո նշան» (1975), ՌԴ «Հայրենիքին մատուցած ծառայության համար» 4–րդ (2004) և 3–րդ (2010) աստիճանների շքանշաններ, բազմաթիվ մեդալներ:

ՍԱՐԳԻՍՄՈՎ Գագիկ Թովմասի (ծ. 1946), ֆիզիոլոգ, փորձարար. նյութահոգեբան: Կենսբ. գիտ. դ–ր (2002): Աշխ–ները վերաբերում են կենդանիների վարքի, հիշողության շարժընթացների մեխանիզմներին ու սկզբունքներին: ՀՀ վարչապետի հուշամեդալ (2011):

ՍԱՐԳԻՍՈՎ Գեորգի Ստեփանի (1924–1992), իրավաբան: Իրավաբ. գիտ. դ–ր (1986), պրոֆ. (1991): Աշխ–ները վերաբերում են հանցագործությունների պատճառների ուսումնասիրմանը և դրանց կանխարգելման ուղիների գիտ. մշակմանը: ՀՀ–ում քրեագիտության հիմնադիրներից է:

ՍԱՐԳՈԴՀԱ, ք. Պակիստանի հս–արլ–ում: Բն.՝ 600 հզ. (2010): Գղտ–յան շրջանի առևտր. կենտրոն է:

ՍԱՐԳՈՆ Հին, Սարգոն Աքքադացի (աքքադ.՝ Շարրում–քեն, Շարրուքին), *Աքքադ* պետության հիմնադիրը. թագավորել է մ. թ. ա. 2316–2261–ին: Սեմական ծագումով: Իր իշխանության տակ է միավորել Հս. Միջագետքը:

ՍԱՐԳՈՆ II (ասուր.՝ Շարրուքին), Ասորեստանի թագավոր՝ մ. թ. ա. 722–705–ին: Մ. թ. ա. 714–ին ներխուժել է Մանա, ապա՝ Վանի թագավորություն. գրավել ու թալանել է *Մուսասիրը*: Սպանվել է արշավանքի ժամանակ:

ՍԱՐԳՍՅԱՆ Ալահվերդի (Սարկիսյան Սերգեյ) Թեմուրովիչ (1945–2017), քիմիկոս: Տեխ. գիտ. դ–ր, պրոֆ.: Մշակել է էկոլոգիայի կիրառ. խնդիրների լուծման համար պատճառահետևանք. կապերի վերլուծության գիտ. ուսումնասիրության եղանակ: Մասնակցել է NO_2 և SO_2 հեռացող գազերի մաքրման տեխնոլոգիայի մշակմանը՝ արսորբցիոն վերականգնող. եղանակով:

ՍԱՐԳՍՅԱՆ Ալիկ Գեղամի (ծ. 1938), ՀՀ բանակի գեն–մայոր (1995): 1959–92–ին ծառայել է ԽՍՀՄ ԶՈՒ–ում. 1992–98–ին՝ ՀՀ ՊՆ ՀՕՊ–ի զորքերի պետ, 1998–2001–ին՝ ՀՀ պաշտպ–յան նախարարի խորհրդական: 2001–ին զորացրվել է:

ՍԱՐԳՍՅԱՆ Աղասի Զալիբեկի (ծ. 1938), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1985), պրոֆ. (1986): Աշխ–ները վերաբերում են հող. և ջր. պաշարների ռացիոնալ օգտագործման հարցերին: ՀՀ «Անանիա Շիրակացի» մեդալ (2000):

ՍԱՐԳՍՅԱՆ Աղասի Սողոմոնի (1905–1985), պետ. և կուս. աշխատող: ՀԽՍՀ ՆԽ նախագահ՝ 1943–47–ին, 1947–52–ին՝ ՌԽՖՍՀ գղտ. փոխնախարար:

ՍԱՐԳՍՅԱՆ Աշոտ Գրիգորի (ծ. 1947), բժիշկ–վնասվածքաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1985), պրոֆ. (1987): ՌԴՏԳԱ փոխնախագահ: Աշխ–ները վերաբերում են վնասվածքաբանությանը և օրթոպեդիային, ռազմադաշտ. վիրաբուժությանը, միկրովիրաբուժությանը, առողջապ–յան կազմակերպմանը: ԽՍՀՄ Պետ. մրց.:

ՍԱՐԳՍՅԱՆ Աշոտ Սարգսի (1903–1941), ռազմ. գործիչ, գնդ. (1936): ՀՄՊ–ում գլխավորել է մոտոհրաձգ. դիվիզիա: Հուլիսին մահացու վիրավորվել է Վիննիցայի շրջանում (Ուկրաինա) մղված մարտի ժամանակ: 1948–ին հայրենի գյուղը նրա անունով կոչվել է Աշոտավան (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում):

ՍԱՐԳՍՅԱՆ Ասատուր Աղայի (1905–1970), ախտաբան–ֆիզիոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (1955), պրոֆ. (1957): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1965): Կարինե *Սարգսյանի* հայրը: Աշխ–ները վերաբերում են որոշ մասնագիտ. թունավորումների պատճառագիտ–յան, ախտածնության ու բուժման, կլինիկ. մահվան տևողության հարցում բարձունք. գործոնի նշանակության և այդ պայմաններում մարսող. համակարգի, երիկամների, լյարդի և այլ օրգանների ֆունկցիոնալ վիճակի ու օրգանների փոփոխ. հակազդունակության (ռեակտիվության) հարցերին: ՀԽՍՀ ախտաբան–ֆիզիոլոգների գիտ. ընկ–յան նախագահ (1956–70):

ՍԱՐԳՍՅԱՆ Արա Միհրանի (1902–1969), քանդ., մանկավարժ, հաս. գործիչ: ՀԽՍՀ (1950), ԽՍՀՄ (1963) ժող. նկարիչ: ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի ակադ. (1958): Պրոֆ. (1947): ԵԳԻ հիմնադիր–տնօրեն (1945–59): Հեղինակ է դիմաքանդակների («Վ. Թոթովենց», 1926, «Ս. Շահումյան», 1949, «Րաֆֆի», 1957, «Վ. Բրյուսով», 1967, ևն), հուշարձանների («Մայիսյան ապստամբության հերոսներին», 1931, Լենինական, Ս. Կիրովի, 1942, Կիրովական, Հ. Թումանյանի, 1957, Ս. Սպենդիարյանի, համահեղ.՝ Ղուկաս *Ջուրաբյան*, 1957, երկուսն էլ՝ Երևան, «Մայր Հայաստան», 1968, 1975–ին տեղադրվել է Լենինականում), կոմպոզիցիաների («Բարձունքի գրավումը», 1942, «Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց», 1950, փայտ, 2002–ին տեղադրվել է ԵՊՀ–ի առջև, ձուլածո պղինձ, ևն), ՀՄՊ–ում զոհված համագյուղացիների հուշարձանի (Զանֆիդա, 1968), «Նելսոն Ստեփանյան» կիսանդրիի (1950, Երևան) և այլ գործերի, որոնց բնորոշ են մոնումենտալ նոր ինչողությունը, պլաստիկ. արտահայտչականությունը և հոգեբ. խորությունը: Ձևավորել է բեմադրություններ, ճանաչվել Հ. Պարոնյանի գործերի լավագույն նկարիչ–մեկնաբանը («Պաղտասար աղբար», 1933, 1954, ևն): ՀԽՍՀ Պետ. մրց. (1970, հետմահու):

ՍԱՐԳՍՅԱՆ Արամ Զավենի (ծ. 1961), քաղ., պետ. գործիչ: Վազգեն *Սարգսյանի* եղբայրը: ՀՀ վարչապետ՝ 1999–ի նոյեմբեր–2000–ի մայիսին: «Հանրապետություն» կուս–յան (2001) հիմնադիր–նախագահ: 2017–ին «Ելք» դաշինքի ցուցակով ընտրվել է ԱԺ պատգամավոր:

ՍԱՐԳՍՅԱՆ Արամ Հակոբի (ծ. 1946), փիլ.: Փիլ. գիտ. դ–ր (1996), պրոֆ. (2001): Աշխ–ները վերաբերում են կրոնի և մշակույթի փիլ–յանը, Հայ եկեղեցու պատմությանը, XIX դ–ի հայ փիլ–յան և ազգ. գաղափարախոսության խնդիրներին («Քրիստոնեական հումանիզմ. պատրանքներ և իրականություն», 1987, «Ժամանակակից հայ եկեղեցին», 1999, «Փիլիսոփայությունը հոգևոր մշակույթի համակարգում», 2006):

ՍԱՐԳՍՅԱՆ Արամ Հակոբի (ծ. 1948), մարզիչ: ԽՍՀՄ վ. մ. (1985): Հունա–հռոմ. ըմբշամարտի ՀՀ հավաքականի մարզիչ (1992–96): Սաներից է օլիմպ. խաղերի մրցանակակիր Միհրան Համբարձումյանը: Գյումրիի պատվ. քաղաքացի (2013):

ՍԱՐԳՍՅԱՆ (Սարկիսով) Արամայիս Ասատուրի (1922–1944), գվարդիայի եֆրեյտոր: ԽՄ հերոս (1944, հետմահու): Հերոսի կոչման արժանացել է Արմ. Դվինայի գետանցման ժամանակ ցուցաբերած անձնազոհության համար (մարմնով ծածկելով հրամ–ին՝ փրկել է նրա կյանքը):

ՍԱՐԳՍՅԱՆ Արամայիս Հակոբի (1930–1996), նկարիչ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1989): 1961–90–ին՝ ԵՏԹ գլխ. նկարիչ: Ձևավորել է «Շունն ու կատուն» (1960), «Չախ–չախ թագավորը» (1968, երկուսն էլ՝ ըստ Հ. Թումանյանի), Կ. Օրբելյանի «Անմահություն» բալետը (1969, ԵՕԹԹ), Ե. Լ. Շվարցի «Մոխրոտ» (1973, ԵԴԹ) և այլ բեմադրություններ, նաև մուլտֆիլմեր («Համառ իշուկը», 1974, Հայֆիլմ, ևն):

ՍԱՐԳՍՅԱՆ Արարատ Վանիկի (ծ. 1956), նկարիչ: Ստեղծել է ֆիգուրատիվ ու խորհրդանշ. պատկերներ («Լուսաբաց», 1987, «Պատկերասրահ», 1991, ևն), «Կորուսյալ դրախտ» (1999, բացիկների հավաքածու): Աստվածաշնչ. և փիլ. իմաստավորումներով է երփնագրել սիրո և ազգ–մշակույթ–մարդ փոխհարաբերությունները («Սեր», 2000, «Արձանագրություն և լանդշաֆտ», 2004, երկուսն էլ՝ նախագիծ–գրքեր, ևն): Համազգ. «Վահագն» մրց. (2002):

ՍԱՐԳՍՅԱՆ Արկադի Երեմի (ծ. 1940), ռազմ. տեխնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1993): Գնդ. (2001): ՀՃԱ. անդամ (1998): Աշխ–ները վերաբերում են հատուկ նշանակության կառուցվածք. բարդ համակարգերի մշակման, կատարելագործման, հրթիռատիեզ. տեխնիկայի առաջն. նմուշների ստեղծման հարցերին: ՌԴ ռազմ. ակադ–ի անդամ (1996):

ԽՍՀՄ Կարմիր դրոշի (1971, 1972) շքանշան, ՌԴ ակադ. Վ. Ն. Չելոմեյի անվ. մեդալ (1997, 1999):

ՍԱՐԳՍՅԱՆ Արմեն Վարդանի (ծ. 1953), դիվանագետ, պետ. գործիչ: ՀՀ նախագահ՝ 2018–ից, ՀՀ վարչապետ՝ 1996–ի հոկտ–1997–ի ապրիլին: Ֆիզմաթ. գիտ. թեկնածու (1979), Քեմբրիջի համալսարանի դ–ր, պրոֆ. (1992): Վարդան Խ. *Սարգսյանի* որդին: 1992–99–ին (ընդհատումով) և 2013–2018–ին՝ ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Մեծ Բրիտանիայի և Հս. Իռլանդիայի Թագավորությունում ու ՆԱՏՕ–ում, 2001–2011–ին՝ Քեմբրիջի համալսարանում «Եվրասիա» կենտրոնի հիմնադիր–տնօրեն:

Մեծ Բրիտանիայի Սր Գևորգ Մեծի, ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1–ին աստիճանի (2017) շքանշաններ:

ՍԱՐԳՍՅԱՆ Արտեմ Եղիշեի (ծ. 1942), լեզվաբան, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ–ր (1987), պրոֆ. (1990): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006): 1999–2012–ին՝ «Արմենիա» հեռուստաընկ–յան գլխ. խմբ.: Հեղինակ է «Գրաբարի տիպաբանական բնութագիրը» (1975), «Արևմտահայ և արևելահայ գրական լեզուներ» (1985) աշխ–ների, «Արևմտահայերենի բառարանի» (1991), «Հայոց բարբառների ատլասի» (2008), հուշապատումի (հ. 1–3, 2006–10), «Փրկության բանալին. 12/21/2012» (2012, անգլ.՝ 2012, ռուս.՝ 2012) վեպի:

ՀԽՍՀ Պետ. մրց. (1985), ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2002), Ֆրիտյոֆ Նանսեն հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2005):

ՍԱՐԳՍՅԱՆ Արտեմ Սարգսի (1926 –2016), օվկիանոսագետ: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1966), պրոֆ. (1968): ՌԴԱ ակադ. (1992, թղթ. անդամ՝ 1981–ից): *Սարմենի* որդին: Աշխ–ները վերաբերում են Համաշխ. օվկ–ի ջերմաստիճանի, հոսանքների և կլիմ. այլ բնութագրերի տեսությանն ու մոդելավորման թվային մեթոդներին: Աշխ–ներ ունի նաև Սևանա լճի մակարդակի բարձրացման եղանակների մասին:

ԽՍՀՄ (1970), ՌԴ (2000) Պետ. մրց–ներ, ԽՍՀՄ Ժողգ–ների բարեկամության (1986), ՌԴ «Պատվո նշան» (2007) շքանշաններ:

ՍԱՐԳՍՅԱՆ Գագիկ Խորենի (1926–1998), պատմաբան, արևելագետ: ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1986): Խորեն *Սարգսյանի* որդին, կարինե *Խուդաբաշյանի* ամուսինը, Նազենիկ *Սարգսյանի* հայրը: 1971–94–ին՝ ՀՀ ԳԱԱ Արևելագիտ. ինստ–ի տնօրեն: Աշխ–ները վերաբերում են հայագիտ–յան («Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին», 1966, ևն), ասորագիտ–յան, սեպագրագիտ–յան խնդիրներին: ԽՍՀՄ արևելագետների միության ՀԽՍՀ մասնաճյուղի նախագահ (1984): ՀԽՍՀ Պետ. մրց. (1985):

ՍԱՐԳՍՅԱՆ Գայանե Ժորայի (ծ. 1956), բանջարաբույծ–կենսատեխնոլոգ: Գղտ. գիտ. դ–ր (1996): Աշխ–ները վերաբերում են ծածկած գրունտի պայմաններում բանջար. մշակաբույսերի բերքատվության բարձրացման հիմունքներին՝ կախված ջր. և սննդ. պայմանակարգերից:

ՍԱՐԳՍՅԱՆ Գեորգի Սոսնիկի (ծ. 1931), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1971), պրոֆ. (1972): Աշխ–ները վերաբերում են սոցիալիզմի քաղաքատնտ–յան (բարեկեցության, իրական եկամուտների, ըստ աշխ–ի բաշխման, սպառման հաս. ֆոնդերի) հարցերին:

ՍԱՐԳՍՅԱՆ Գևորգ Արտաշեսի (ծ. 1934), դրամատուրգ, արձակագիր: Հեղինակ է «Կարոտ» (1971), «Հորովելը» (1977), «Գլադիատորը» (1979), «Ավելորդ մարդը» (1998), «Դաս կանանց» (2003) և այլ պիեսների, «Յոթն ընդդեմ աքաղաղի» (1984), «Գիժ ուլիկը» (1990), «Գողը» (2003) պատմվածքների, «Որ սպանեն չպիտի մեռնենք» (2002) պիեսների ժող–ների:

ՍԱՐԳՍՅԱՆ Դավիթ Մկրտչի (ծ. 1957), արձակագիր, հրապարակախոս, հրտ.: Մկրտչ *Սարգսյանի* որդին, Վահագն *Սարգսյանի* եղբայրը: 1990–98–ին՝ «Հայաստան» հրտչ–յան, 1998–2011–ին՝ ՀԱԳ–ի տնօրեն: Հեղինակ է «Երկվություն» (2012), «Ես և մերոնք» (2013) վիպակների, պատմվածքների, էսսեների, հոդվածների ժող–ների:

ՀԺՄ մրց. (1985), Ֆիտյոֆ Նանսեն հիմնադրամի ոսկե (2006), ՀԳՄ «Գրական վաստակի համար» (2007) և ՀՀ ՄՆ ոսկե (2007) մեդալներ:

ՍԱՐԳՍՅԱՆ Երվանդ Ղազարի (1913–2010), պատմաբան, արևելագետ–թուրքագետ: Պատմ. գիտ. դ–ր, պրոֆ.: Աշխ–ները վերաբերում են Օսմ. կայսրության, Թուրքիայի հաս., տնտ. հարաբերություններին, ժամանակակից թուրք. պատմագրության խնդիրներին, Արմ. Հայաստանում Օսմ. կայսրության տնտ. քաղ–յանը: «Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ» (1963, համահեղ.՝ Ռ. Սահակյան) երկը հրատարակվել է ԱՄՆ–ում (անգլ., 1965):

ՍԱՐԳՍՅԱՆ Էդուարդ (ծ. 1934), ճարտ.: Հեղինակ է բնակելի համալիրների Լավանդում, Նոր Կալեդոնիայում, Մարսելում, նաև Հայկ. արվ–ի կենտրոնի, «Պուգետ» վարչ. շենքի, պատմության թանգարանի, բանկի ևն, Կաննում, Նիսում՝ բանկերի, Գյումրիում՝ ֆրանս. դպրոցի (համահեղ., 1993–97) և այլ կառույցների նախագծերի:

ՍԱՐԳՍՅԱՆ Էդուարդ Գևորգի (1908–1990), նկարիչ: ՀԽՍՀ վաստ. նկարիչ (1961): Հեղինակ է նատյուրմորտների («Նատյուրմորտ: Միրգեր», 1945), բնանկարների («Հին Աշտարակը», 1960), դիմանկարների, թեմատիկ պատկերների («Իմ նախնիները», 1968, նկարաշար Մովսես Խորենացու «Հայոց պատմության մոտիվներով», 1967–68, ևն), գրաֆիկ. գործերի:

ՍԱՐԳՍՅԱՆ Էլմիրա Դանիելի (ծ. 1939), բուսաբան: Կենսբ. գիտ. դ–ր (2002): Աշխ–ները վերաբերում են փորձանոթում (in vitro) և անհող աճեցման պայմաններում արժեքավոր եթերայուղատու, ներկատու, դեղատու, ծաղկային գեղազարդիչ բույսերի ու վիրուսազերծ կարտոֆիլի կլոնային մանրաբազմացմանը, աճեցման ֆիզիոլոգիակենսաքիմ. առանձնահատկություններին և տնկանյութի արտադր–յան գիտ. հիմունքներին:

ՍԱՐԳՍՅԱՆ Թամարա Ֆադեյի (ծ. 1951), գենետիկ: Կենսբ. գիտ. դ–ր (1996), պրոֆ. (2000): Ֆադեյ *Սարգսյանի* դուստրը: Աշխ–ները վերաբերում են ժառանգ. հիվանդություններով պայմանավորված գենային և քրոմոսոմ. մուտացիաների որոշմանը, որոնք նպաստում են մոլ. և քրոմոսոմ. մակարդակով ժառանգ., սրտային, վարակիչ և այլ հիվանդությունների վաղաժամ ախտորոշմանը, ՀՀ–ում բժշկ. գենետիկայի և մոլ. ախտորոշման զարգացմանը:

ՍԱՐԳՍՅԱՆ Իննա Ռոբերտի (ծ. 1961), մանկավարժ: Մանկավարժ. գիտ. դ–ր (2012), պրոֆ. (2014): Աշխ–ները վերաբերում են ռուս–ի, հայ–ի, անգլ–ի, բուլղ–ի համեմատ. տիպաբանությանը, դասավանդման մեթոդիկային, թարգմ–յան տեսությանը, միջմշակութ. հաղորդակցությանը, դարձվածաբանությանն ու բառագիտ–յանը ևն: ՌԴ Կառ–յան Վալերի Բրյուսովի անվ. մեդալ (2012):

ՍԱՐԳՍՅԱՆ Իշխան Սարիբեկի (ծ. 1930), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1970), պրոֆ. (1971): Աշխ–ները վերաբերում են Շրեդինգերի, Շտուրմ–Լիուվիլի և Դիրակի օպերատորների սպեկտր. հատկությունների ուսումնասիրմանը, ոչ կիսասահմանափակ դիֆերենցիալ օպերատորների սեփ. արժեքների երկկողմ ասիմպտոտիկ բաշխմանը:

ՍԱՐԳՍՅԱՆ Լազար Երեմի (ծ. 1938), ճարտարագետ, մետաղագետ: Տեխ. գիտ. դ–ր (1988), պրոֆ. (1989): Աշխ–ները վերաբերում են մագնիս., ջերմաֆիզ. դիմադրության և այլ ֆիզ. հատկություններով,

բարձր քիմ. մաքրության և կանխապես առաջադրված բնութագրերով փոշեհամաձուլվածքների (այդ թվում՝ Հրազդանի լեգիրված երկաթի հիմքի վրա) ստացման հարցերին, մոլիբդենի, պղնձի և ցինկի մետաղագիտ–յանը:

ՍԱՐԳՍՅԱՆ Լիպարիտ Տիգրանի (ծ. 1938), բանաստեղծ, արձակագիր: Հեղինակ է «Ակոս» (1983), «Մենախոսություն» (1990), «Խաչված ճակատագիր» (2000), «Յորնաշեղջ» (2003), «Կարոտի եզերք» (2010), «Արարման խորհուրդ» (2013), «Արդար ճանապարհ» (2016) բանաստեղծությունների, «Զորավոր կաղնին» (1981), «Մանկության արահետ» (2004) վիպակների ու պատմվածքների, «Ծույլ հավը» (1988), «Ճոճհավ» (2012) և մանկ. բանաստեղծությունների այլ ժող–ների, «Վահագնի» (1986) ինքնակենսագր. վիպակի:

ՀԳՄ Ս. Զորյանի (1991), Վ. Անանյանի (2006), «Հրանտ և Մանուշակ Սիմոնյաններ» հիմնադրամի (2012), Ա. Իսահակյանի (2016) անվ. մրց–ներ, ՀՀ ՄՆ ոսկե (2008), ՀԳՄ «Գրական վաստակի համար» (2008), «Գրիգոր Նարեկացի» (2013) մեդալներ, ՀՀ վարչապետի (2008), Ֆրիտյոֆ Նանսեն հիմնադրամի ոսկե (2008) հուշամեդալներ:

ՍԱՐԳՍՅԱՆ Լևոն Ազատի (ծ. 1959), դիվանագետ, արևելագետ, հատուկ հանձնարարություններով դեսպան (2010–ից): Պատմ. գիտ. դ–ր (2010), պրոֆ. (2010): Սերժ ***Սարգսյանի*** եղբայրը: 1998–2005–ին՝ ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Սիրիայում, Հորդանանում, Թունիսում, Ալժիրում: 2008–ից՝ «***Փյունիկ***» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ: Աշխ–ները վերաբերում են հայ եկեղեցու պատմության, աղբյուրագիտ–յան, միջնադար. մշակութաբանության հարցերին: Գյումրիի պատվ. քաղաքացի (2016):

ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2–րդ աստիճանի մեդալ (2016), ՀՀ վարչապետի հուշամեդալ (2013):

ՍԱՐԳՍՅԱՆ Լևոն Դավթի (1862–1927), գր., հաս. գործիչ, խմբ.: 1905–07–ին՝ «***Մուրճ***», 1918–19–ին՝ «Մարդկայնութիւն» (Ալեքսանդրապոլ) պարբ–ների խմբ.: Հեղինակ է «Այց թիւրքաց Հայաստանին» (1890), «Մի քանի օր Արցախում եւ Սիւնիքում» (1905) ճամփորդ. նոթերի, «Ժողովրդի կրթութեան գործը մեզանում» (1892) մանկավարժ. աշխ–յան, «Հին ցաւ» (1900) հրապարակախոս. հոդվածների ժող–ի:

ՍԱՐԳՍՅԱՆ Լևոն Տոնոյի (1911–1985), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1977), պրոֆ. (1980): Աշխ–ները վերաբերում են Հայկ. լ–աշխարհում նախնադար. համայն. արտադրաեղանակի ձևավորման ու զարգացման հարցերին, ՀԽՍՀ այգեգործության պատմությանը:

ՍԱՐԳՍՅԱՆ Խաչիկ Վազգենի (ծ. 1953), անասնաբույժ: Անասնաբուժ. գիտ. դ–ր (2017): ՀՀ «Մննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության կենտրոն» ՊՈՒԱԿ–ի տնօրեն (2007–ից): Աշխ–ները վերաբերում են կենսապատրաստուկների արտադր–յան տեխնոլոգիային, որակի վերահսկողության ու գրանցման հարցերին, սննդամթերքի անվտանգության խնդիրներին:

ՍԱՐԳՍՅԱՆ Խորեն Սարգսի (1891–1970), գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1964), պրոֆ. (1967): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): Գագիկ ***Սարգսյանի*** հայրը: Հեղինակ է «Վահան Տերյան» (1926), «Լևոն Շանթ» (1930), «Նալբանդյանի գրական ստեղծագործությունը» (1959), «Ստեփան Զորյան» (1960), «Սայաթ–Նովա» (1963) և այլ աշխ–ների:

ՍԱՐԳՍՅԱՆ Կարինե Ասատուրի (ծ. 1945), ստամոքսաղիքաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1995): Ասատուր ***Սարգսյանի*** դուստրը: Առաջարկել է հաստ աղիի ֆունկցիոնալ և բորբոք. հիվանդությունների (հաստ աղիի ոչ առանձնահատուկ խոց. բորբոքում, Կրոնի հիվանդություն) ախտորոշման ու բուժման նոր մեթոդներ:

ՍԱՐԳՍՅԱՆ Հակոբ Երվանդի (ծ. 1936), հաշվող. մեքենաների բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. թեկնածու (1973): Աշխ–ները վերաբերում են հաշվող. մեքենաների տարրերի, ԱԿՀ–երի հետազոտման ու մշակման հարցերին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1987):

ՍԱՐԳՍՅԱՆ Հայկ Լևոնի (ծ. 1948), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1990), պրոֆ. (2003): Աշխ–ները վերաբերում են տնտ. և սոցիալ. համակարգերի կառավարման, ՀՀ տնտ–յան զարգացման խնդիրներին:

ՍԱՐԳՍՅԱՆ Հարմա Գեղամի (1908–1988), ճարտարագետ–շինարար: Տեխ. գիտ. թեկնածու (1973), ՀԽՍՀ վաստ. շինարար (1957): Նախագծել և իրականացրել է (համահեղինակների հետ) Սևանի (1949), Գյումուշի (1953), Արզնիի (1953–1956), Աթարբեկյանի (1954–59), Երևանի (1957–62), Տաթևի (1970) ջրէկների կառուցումը: Երևանի և հանրապետության մի շարք քաղաքներում կառուցված տարբեր շենքերի և հուշարձանների գլխ. կոնստրուկտոր:

ՍԱՐԳՍՅԱՆ Հենրիկ Մուշեղի (ծ. 1942), մեքենագետ: Տեխ. գիտ. դ–ր (1992), պրոֆ. (1994): ՀԳԳԱ թղթ. անդամ (1996): Աշխ–ները վերաբերում են գղտ. մեքենաների կառուցատարրերի կատարելագործման խնդիրներին, բացահայտել է արտաքին միջավայրի մեխ. բեռնվածությունների ներգործության բնույթը բույսերի կառուցվածքի վրա:

Միջազգ. բնապահպանության, կենսագործունեության անվտանգության և էկոլոգիայի ակադ–ի (1996), ՀՃԱ (1997) անդամ: ՀԱԱՀ ոսկե մեդալ (2012):

ՍԱՐԳՍՅԱՆ Հովսեփ Համայակի (ծ.1927), երկրաբան: Երկրբ–հնաքր. գիտ. դ–ր (1978), պրոֆ. (1977): ՀԽՍՀ վաստ. երկրաբան (1970): Աշխ–ները վերաբերում են Փոքր Կովկասի երկրբ. կառուցվածքին՝ տեկտոնիկային, շերտագրությանը, երկրբ. զարգացման պատմությանը: Հեղինակ է «Երկրաբանական տերմինների ռուս–հայերեն բառարանի» (1984), «Երկրաբանական տերմինների եռալեզու հանրագիտական բառարանի» (2007): ԵՊՀ ոսկե մեդալ (1999):

ՍԱՐԳՍՅԱՆ Հովհաննես Ստեփանի (1902–1997), երկրաբան: Երկրբ. գիտ. դ–ր (1948), պրոֆ. (1950): Աշխ–ները վերաբերում են ՀՀ հս. շրջանների պղնձահանքաքար. և բազմամետաղ. հանքայնացման, շերտագրության, տեկտոնիկայի և մագմատիզմի հարցերին:

ՍԱՐԳՍՅԱՆ Ղազարոս (Ղազար) Հակոբի (1874–1960), ճարտ.: Ս–ի նախագծերով կառուցվել են բնակելի, հաս., արդ. շենքեր. Թիֆլիսում՝ Աֆրիկյան եղբայրների կարավանատունը (1902), «Մանթաշյանի առևտրաշարքը» (1904), Ա. Մանթաշյանի առևտր. դպրոցը ևն, Լենինականում՝ Մանվածք. և տեքստիլ ֆաբրիկաների մասնաշենքերը, հիվանդանոց, կինոթատրոն, մասնակցել է Կենտր. հրապարակի հատակագծմանն ու կառուցապատմանը (1924–ից):

ՍԱՐԳՍՅԱՆ Մասիս Աղասարի (ծ. 1949), կենսաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1999): Աշխ–ները վերաբերում են ՀՀ–ում մշակաբույսերի և անտառ. գլխ. վնասատուների դեմ բակտեր. պատրաստուկների կիրառման կենսաէկոլոգ. խնդիրներին: Ստեղծել է միջատասպան բակտեր. պատրաստուկներ:

ՍԱՐԳՍՅԱՆ Մարիա Աշոտի (1905–1998), համաճարակաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1969): ՀԽՍՀ վաստ. բժիշկ (1954): Աշխ–ները վերաբերում են ՀՀ բնակչության շրջանում մալարիայի, ամեոբիազի, տոքսոպլազմոզի և մակաբուծ. այլ հիվանդությունների տարածվածության և կանխարգելիչ միջոցների մշակմանը:

ՍԱՐԳՍՅԱՆ Մանթաշի Տիգրանի (ծ. 1936), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1988), պրոֆ. (1990): Աշխ–ները վերաբերում են անձն. սեփականության, բնակչության պահանջմունքների և ապրելակերպի սոցիալ–տնտ. հարաբերություններին:

ՍԱՐԳՍՅԱՆ Մկրտիչ Դիվինի (1924–2002), գրող, խմբ.: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (1975): Դավիթ և Վահագն ***Սարգսյանների*** հայրը: 1959–62–ին՝ «Գրական թերթ»–ի, 1962–70–ին՝ «Հայաստան» հրտչ–յան գլխ. խմբ., 1976–86–ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար: Հեղինակ է «Կարոտի երգ» (1966), «Աստղաբույլ» (1983) բանաստեղծությունների, «Խաղաղություն պատերազմից առաջ» (1981), «Կյանքը կրակի տակ» (1963), «Տիրամոր պատկերի առջև» (1965), «Ճակատագրով դատապարտվածները» (1967), «Գարուն էր, ձյուն էր արել» (1984) պատմվածքների, վիպակների ժող–ների, «Սերժանտ Կարոն» (1970), «Քաջ Նազար» (1980), «Չմակարդվող արյուն» (1985), «Շահմարի առեղծվածը» (1986), «Գրիգոր Նարեկացի» (1989), «Դարավերջի հայր» (1999) վեպերի:

ՀԽՍՀ Պետ. (1989), Լ.Ղ.Հ Եղիշեի անվ. (2000) մրց–ներ: 2008–ին «Հայաստան» հրտչ–յունը և ՀԳՄ համատեղ սահմանել են Ս–ի անվ. գր. մրց.:

ՍԱՐԳՍՅԱՆ Մուշեղ Սիրունի (ծ.1948), քիմիկոս–օրգանիկ: Քիմ. գիտ. դ–ր (1990): Աշխ–ները վերաբերում են վինիլպրոպարգիլային համակարգերում տեղակալման ռեակցիաների, օրգ. եթերների օքսիդացման և հիդրօքսիհիմիններում, օղակագծային տաուտոմերիայի խնդիրներին: Հայտնաբերել է բուտադիեն–ենի–նային հալոտրոպիայի երևույթը:

ՍԱՐԳՍՅԱՆ Մուրազ Սարուխանի (ծ. 1943), ՀՀ բանակի գեն–լեյտ. (2008, գեն–մայոր՝ 1990): Ծառայել է ԽՍՀՄ ՋՈՒ–ում, եղել դիվիզիայի հրամ., բանակ. կորպուսի փոխհրամ.: 1992–2008–ին՝ ՀՀ ՋՈՒ մարտ. պատրաստության վարչության պետ: Զբաղվում է ռազմ. կրթության և հայրենասիր. դաստիարակության հարցերով:

ՀՀ Պատվո, «Մարտական խաչ» 2–րդ աստիճանի շքանշաններ, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1–ին աստիճանի (2013), Արիության, Մարտական ծառայության մեդալներ:

ՍԱՐԳՍՅԱՆ Յուրի Լևոնի (ծ. 1941), ճարտարագետ–մեխանիկոս: Տեխ. գիտ. դ–ր (1975), պրոֆ. (1977): ՀՀ ԳԱԱ (1996, թղթ. անդամ՝ 1986–ից), ՀՃԱ (1993), ՄՃԱ (1995) ակադ.: ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2011): Մեխանիզմների սինթեզի տեսության նոր

ուղղության՝ ապրոքսիմացիոն կինեմատիկ. երկրչփ-յան հիմնադիրն է: 1988–2006-ին՝ ՀՊՃՀ ռեկտոր, 1995–96-ին, միաժամանակ՝ ՀՀ ԳԱԱ փոխնախագահ: Աշխ-ները վերաբերում են մեխանիզմների սինթեզի տեսությանը, ռոբոտատեխ. նոր տեսակների ստեղծմանը: Տեխ. գիտությունների և ՏՏ ոլորտում ՀՀ նախագահի մրց-ի շնորհման հանձնաժողովի նախագահ: Ամերիկ. ճարտարագետ-մեխանիկոսների ընկ-յան (1978), Մեքենաների և մեխանիզմների տեսության միջազգ. ֆեդերացիայի (1995) Հատուկ մրց., Միջազգ. կենսագր. կենտրոնի (Քեմբրիջ) լավագույն կրթ. գործիչ (2006):

ԽՍՀՄ «Պատվո նշան» (1985), ՀԱԵ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2003) շքանշաններ, ՀՀ «Անանիա Շիրակացի» (1999), ԼՂՀ «Երախտագիտություն» (2008) մեդալներ:

ՍԱՐԳՍՅԱՆ Յուրի Օթելլոյի (ծ. 1961), ծանրամարտիկ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1983): Օլիմպ. խաղերի 2-րդ մրց. (1980), Եվրոպայի կրկնակի (1982, 1983), աշխարհի կրկնակի (1982, 1983) չեմպիոն: Սահմանել է համաշխ. 12 ռեկորդ:

ՍԱՐԳՍՅԱՆ Նազենիկ Գագիկի (ծ. 1954), երաժշտագետ, պարագետ, հոգեբան: Արվեստագիտ. թեկնածու (1992): Գագիկ ***Սարգսյանի*** և Կարինե ***Խուդաբաշյանի*** դուստրը: Հիմնադրել է երաժշտության և պլաստիկայի մանկ. պարախումբ (1986): Մշակել է պարային թերապիայի հատուկ համակարգ:

ՍԱՐԳՍՅԱՆ Նարեկ Ալբերտի (ծ. 1958), ճարտ.: ՀՀ (2007), ՌԴ (2014) վաստ. ճարտ.: ՀՀ քաղաքաշին-յան նախարար (2014–16), ՀՀ Կառ-յանն առընթեր քաղաքաշինյան պետկոմի նախագահ (2016-ից): 2001-ից՝ Երևանում հս. պողոտայի կառուցապատման նախագծի գլխ. ճարտ.: Հեղինակ է շենքերի և կառույցների երկրաշարժակայունության բարձրացմանը, ճարտ. կրթությանը, Երևանի քաղաքաշին. առանձնահատկություններին վերաբերող գիտ. և նախագծ. աշխ-ների, համալիր կառույցների, 2004-ին՝ Երևանի գլխ. պողոտայի բնակելի համալիրների նախագծերի, 2001–04-ի գլխ. հատակագծի, Գյումրիում՝ Ֆրանս. դպրոցի (1993–97), Երևանում՝ Իտալիայի դեսպանատան (2002) և այլ շենքերի նախագծերի:

Երիտասարդ ճարտ-ների գիտ. աշխ-ների (1985, Կիև, 1990, Մոսկվա) համամիութ., «Տարվա լավագույն կառույց» միջազգ. (1994) ստուգատեսների դափնեկիր: ՀՀ Պետ. մրց. (2003, 2015), «Անանիա Շիրակացի» մեդալ (2015), Ֆրանսիայի Արժեքների ազգ. ասպետի (2002, 1-ին և 2-րդ աստիճանների), ՄՃԱ «Ճարտարագիտության փառքի» (2013), ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» (2016) շքանշաններ:

ՍԱՐԳՍՅԱՆ Շահեն Հովհաննեսի (1924–2002), Փառքի 3 աստիճանների շքանշանակիր (1944, 1944, 1945), կրտսեր լեյտ.: Աչքի է ընկել Կուրսկի ճակատամարտում, Բելառուսի, Լեհաստանի ազատագրման մարտերում:

ՍԱՐԳՍՅԱՆ Շանթ Վարոսի (1919–2000), նկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (1978): Հեղինակ է բնանկարների («Հին Լենինական», 1943, «Մայրամուտ ձմռանը», 1977, «Դիլիջան տանող ճանապարհը», 1978, ևն), դիմանկարների («Ինքնանկար», 1937, «Կոմպոզիտոր Ն. Տիգրանյան», 1949, «Մանածագործուհին», 1967, ևն), թեմատիկ պատկերների, նատյուրմորտների:

ՍԱՐԳՍՅԱՆ Ջոն Սարգսի (ծ. 1936), նյարդաֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ-ր (1989): Աշխ-ները վերաբերում են գլխուղեղի շարժիչ կենտրոնների նեյրոն. կազմավորմանը, կեղևի և ենթակեղևային գոյացությունների նոր սինապսների ստեղծմանը: Ուղեղի հետազոտության միջազգ. կազմ-յան անդամ (1982-ից):

ՍԱՐԳՍՅԱՆ Ռաշիդ Թևոսի (ծ. 1939), անասնաբույծ: Գղտ. գիտ. դ-ր (2006), պրոֆ. (2013): Աշխ-ները վերաբերում են կովկաս. գորշ ցեղի ցածրակիթ կովերի և մսատու մի շարք ցեղերի ու զերուի տրամախաչման տնտ. արդյունավետությանը, և այլ հարցերի: ՀԱԱՀ ոսկե մեդալ:

ՍԱՐԳՍՅԱՆ Ռաֆայել Գուրգենի (ծ. 1952), ուռուցքաբան: Բժշկ. գիտ. դ-ր (2002), պրոֆ. (1999): Աշխ-ները վերաբերում են փափուկ հյուսվածքների սարկոմաների համալիր բուժման նոր եղանակների մշակմանն ու կիրառմանը, նաև ստամոքսաղիք., շնչառ. համակարգերի, կաթնագեղձի չարորակ ուռուցքների բուժման արդյունքների բարելավման խնդիրներին:

ՍԱՐԳՍՅԱՆ Ռաֆայել Երեմի (1943–2014), ԱԿՀ-երի բնագավառի գիտնական: Ֆիզ-մաթ. գիտ. դ-ր, պրոֆ.: Աշխ-ները վերաբերում են նորամուծական (ինովացիոն) տեխնոլոգիաների, մաթ. պաշարների օգտագործման հարցերին:

ՍԱՐԳՍՅԱՆ Ռոմանոս Վարդանի (1928–1985), նկարիչ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1983): Պրոֆ. (1984): Հեղինակ է բնանկարների, նատյուրմորտների, թեմատիկ պատկերների («Աշունը Դիլիջանում», 1963, «Հնագույն գրքեր», 1965, «Կեչաոիսի վանքը», 1980, «Էդվարդ Միրզոյան», 1982, «Նռներ», ևն):

ՍԱՐԳՍՅԱՆ Ռուբեն Սերգեյի (1922–2003), խոցման ավիացիոն միջոցների բալիստիկայի բնագավառի գիտնական: Բանակի գնդ. (1987): Տեխ. գիտ. դ-ր (1958), պրոֆ. (1960): ՌԽՖՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1982): Աշխ-ները վերաբերում են օդ., տիեզ. նպատակակետերի խոցման միջոցների գնահատման և դրանց մշակման մեթոդներին:

ԽՍՀՄ Կարմիր աստղի (2), ՀՄՊ 2-րդ աստիճանի շքանշաններ:

ՍԱՐԳՍՅԱՆ Ռուբեն Սուրենի (1946–2013), կոմպոզիտոր: ԵՊԿ պրոֆ. (2004): Գրել է 2 սիմֆոնիա, կոնցերտներ, սոնատներ, 2 տրիո, գործիք. պիեսներ («Հայկական գրաֆիկա», «Կոմիտասին»՝ դաշնամուրի համար), վոկալ շարքեր («6 պատմվածք անցյալից», «Սիրո մասին»՝ հին չին և եգիպտացի բանաստեղծների տեքստերով): ՀՀ Պետ. մրց. (2007):

ՍԱՐԳՍՅԱՆ Սամվել Ժորայի (ծ. 1955), դերասան, ռեժ.: 1977–89-ին՝ Լենինականի դրամատիկ., 1990–98-ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնների դերասան (Տիգրան՝ Ա. Քալանթարյանի «Թիկունք», Սենսինիոր՝ Պ. Ջակոմետտիի «Ոճրագործի ընտանիքը», Ջորջ՝ Ռ. Կունիի «Գիշերային խրախճանք», Վիգեն՝ Պ. Զեյթունցյանի «Անավարտ մենախոսություն», ևն): Լենինականում հիմնադրել է «Հումորի և սատիրայի» թատրոն (1984–88, գլխ. ռեժ. և գեղ. ղեկ.): 2004–07-ին՝ ԱՄՆ-ում (Արմեն՝ Ա. Աղասարյանի «Փրկենք մեր հոգիները», ևն): Նկարահանվել է «Մեր մանկության տանգոն» (1984), «Մարիամ» (2005), «Հարսնացուն կրկեսից» (2011, երեքն էլ՝ գեղ.), «Կյանքի գինը», «Վերադարձ», «Խաչվող հետքեր» (երեքն էլ՝ հեռուստասերիալ) և այլ ֆիլմերում:

Երևանի Քաղաքապետի (2013), ՀՀ ՄՆ (2014) ոսկե մեդալներ, «Վահագն» մրց. (2003):

ՍԱՐԳՍՅԱՆ Սամվել Հովհաննեսի (ծ. 1944), մեխանիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1987), պրոֆ. (1989): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2009): Աշխ-ները վերաբերում են բարակ սալերի և թաղանթների ոչ գծային տեսություններում ֆունկցիոնալ անալիզի մեթոդներին, նրանց կոնտակտային խնդիրներին, մագնիսաառաձգականությանը ևն:

ՍԱՐԳՍՅԱՆ Սամվել Վլադիմիրի (ծ. 1957), մեխանիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1997), պրոֆ. (2000): Վլադիմիր ***Սարգսյանի*** որդին: Աշխ-ները վերաբերում են դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկային, սալերի և թաղանթների տեսության դինամիկ. խնդիրներին, բարակապատ մարմինների մագնիսաառաձգականության տեսությանը:

ՍԱՐԳՍՅԱՆ Սանասարուկ Մարտիրոսի (1915–1985), կենսաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1954), պրոֆ. (1957): Աշխ-ները վերաբերում են Հայաստանում շերամապահության զարգացման խնդիրներին: Բոժոժների արտադր-յան համար առաջարկել է աշխարհում առաջին մեքենայացված հոսքագիծը: Ստեղծել է վնասատու միջատների դեմ պայքարի գենետիկ. եղանակ:

ՍԱՐԳՍՅԱՆ Սարգիս Դոնիկի (1932), փիլ.: Փիլ. գիտ. դ-ր (1984), պրոֆ. (1977): Միջազգ. փիլ. ակադ-ի անդամ (1994): Աշխ-ները (բուլղ.) վերաբերում են ժամանակակից հասարակագիտ-յան, գաղափարախոսության մեջ փիլ-յան գրաված տեղին ու գործառույթին, իմացաբանությանը («Բնագիտության փիլիսոփայություն», 1998, «Հայաստան: Հոգևոր և գիտական կյանքը դարերի ընթացքում», 2001):

ՍԱՐԳՍՅԱՆ Սարգիս Իգիթի (Հակոբի, 1926–2002), քանդ.: Ստեղծել է Ա. Վ. Սուվորովի, Ա. Ս. Պուշկինի հարթաքանդակները (երկուսն էլ՝ 1954), «Հայ գրականության դասականներ» (1957, ֆելզիտ), «Հայ կոմպոզիտորներ» (1961, ֆելզիտ) սկահակները, «Սայաթ-Նովա» խճանկարը (1963), ՀՄՊ-ում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանները ՀՀ Սյունիքի մարզի Կալեր (1965) և Ներքին Սազրա (1967) գ-երում:

ՍԱՐԳՍՅԱՆ Սարգիս Կարապետի (1907–1992), բալետի արտիստ: ՀՀ վաստ. արտիստ (1945): Հայկ. բալետի հիմնադիրներից: 1927–39-ին (ընդհատումով)՝ Թիֆլիսի, Լենինգրադի, 1938–60-ին՝ Երևանի ՕԲԹ-ների մենապարող (Արմեն՝ Ա. Խաչատրյանի «Երջանկություն», Վացլավ, Գիրեյ՝ Բ. Վ. Ասաֆևի «Բախչիսարայի շատրվանը», Բակուր՝ Է. Հովհաննիսյանի «Մարմար», ևն):

ՍԱՐԳՍՅԱՆ Սաքո Հովհաննեսի (1916–1989), գրող, գրականագետ: Բանասիր. գիտ. թեկնածու (1949): Հեղինակ է «Մանուկն ու կակաչը» (1938), «Նվերը» (1939), «Գետակի երգը» (1939) մանկ. բանաստեղծությունների ժող-ների, «Մ. Արազու ստեղծագործությունը» (1954), «Երգիծանքը հայ ժողովրդական հեքիաթներում և առակներում» (1975) գրականագիտ. աշխ-ների, «Պետրոս Դուրյան» (1959), «Սուրեն Սպանդարյան» (1964), «Նար-Դոս» (1973),

«Ալիշան. պատկերներ կյանքից» (1978) էսսեների:

ՍԱՐԳՍՅԱՆ Սերգեյ Արամի (1921–1991), ճարտարագետ-տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (1966), պրոֆ. (1967): ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1976): Աստղագնացության միջազգ. ակադ-ի անդամ (1985): Աշխ-ները վերաբերում են տեխ. մեծ համակարգերի զարգացման հիմն. միտումներին, զարգացման կանխատեսման մեթոդաբանության, հատուկ տեխնիկայի արդյունավետության տես. հարցերին:

ՀՄՊ 1-ին աստիճանի, ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (2), Կարմիր աստղի և «Պատվո նշան» շքանշաններ:

ՍԱՐԳՍՅԱՆ Սերգեյ Գալուստի (1907–1981), երկրաբան: Երկրբ-ինքբ. գիտ. դ-ր (1939), պրոֆ. (1947): Աշխ-ները վերաբերում են Արևմտասիբիր. դաշտավայրի պալեոզոյան նստվածքների նավթագազաբերության, ՀՀ-ում երրորդականի նստվածքների նավթագազաբերության, Սևանի ավազանի հանքաբանության հարցերին:

ՍԱՐԳՍՅԱՆ Սերժ Ազատի (ծ. 1954), պետ., կուս-քաղ. և հաս. գործիչ: ՀՀ նախագահ՝ 2008–18-ին (վերընտրվել է 2013-ին), ՀՀ վարչապետ՝ 2007–08-ին, 2007-ից՝ ՀՀԿ նախագահ: Արցախի հերոս (2008): 1979–1988-ին պաշտոնավարել է ԼՂԻՄ-ի կոմերիտ. և կուս. մարմիններում: 1989–93-ին՝ ԼՂՀ ԻՊՈՒԿ-ի նախագահ, 1993–95 և 2000–07-ին՝ ՀՀ պաշտպ-յան նախարար: 1995–96 և 1999-ի հունիս–նոյեմբ-ին՝ ՀՀ ԱԱ, 1996–99-ին՝ ՀՀ ԱԱ և ՆԳ նախարար, 1999–2007-ին՝ ՀՀ նախագահին առընթեր ԱԱ խորհրդի քարտուղար, 1999–2000-ին՝ ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկ.: 1994-ի մայիսի 16-ին Մոսկվայում ստորագրել է Ադրբեջանի հետ հրադադար հաստատելու մասին համաձայնագիրը: ՀՀ շախմատի ֆեդերացիայի (2004-ից) և ԵՊՀ կառավարման խորհրդի նախագահ:

ԼՂՀ «Ոսկե արծիվ» (2008), ՀՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի, «Տիգրան Մեծ» (2006) շքանշաններ և պետ. այլ պարգևներ:

ՍԱՐԳՍՅԱՆ Սերժիկ Հակոբի (ծ. 1953), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դ-ր (1996): Մշակել է մետաղապոլիմերների ստացման նոր եղանակներ: Բացահայտել է ազոլային միացությունների էլեկտրաքիմ. վերականգնումն անցողիկ մետաղների վրա՝ ոչ պրոտոնային օրգ. լուծիչներում 4-րդային ամոնիում. աղերի ներկայությամբ:

ՍԱՐԳՍՅԱՆ Սոս Արտաշեսի (1929–2013), դերասան: ՀՀ (1972), ԽՍՀՄ (1986) ժող. արտիստ: Պրոֆ. (2003): 1954–91-ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասան, 1991-ից՝ Համազգ. թատրոնի հիմնադիր-գեղ. ղեկ.: Անձնավորել է տառապող և ուժեղ բնավորություններ (Արտաշես՝ Գ. Տեր-Գրիգորյանի «Վերջին մեխակներ», 1958, Զիմզիմով՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», 1966, Յագո՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», 1969, Վարդան Ադամյան՝ Ժ. Հարությունյանի «Խաչմերուկ», 1977, Մացակ՝ «Հացավան»՝ ըստ Ն. Զարյանի, 1980, Թաղապետ՝ Դե Ֆիլիպպոյի «Սանիտայի թաղապետը», 1991, ռեժ.՝ Ս., ևն): Նկարահանվել է կինոյում («Եռանկյունի», «Մենք ենք, մեր սարերը», «Խաթաբալա», «Նահապետ», «Ձորի Միրո» ևն), «Մատենադարան» (Ասացող) վավերագր. հեռուստաֆիլմում, խաղացել է հեռուստաթատրոնում, հանդես եկել ասմունքով: Հեղինակ է «Վարագույրից այս կողմ» (1991), «Ընդհատում» (2000) վիպակի, «Մենք ու մերոնք…» (2001) հուշերի:

ՀՀ Պետ. մրց. (1975, 1979, 1988), ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (1996), ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» (2001) շքանշաններ, ԼՂՀ «Մխիթար Գոշ» մեդալ (2001):

ՍԱՐԳՍՅԱՆ Սոֆիկ Գուրգենի (ծ. 1951), ռեժ., դերասանուհի: 1978–80-ին՝ ԵԴԹ, Կինոդերասանի թատրոնի դերասանուհի: Նկարահանվել է «Այս կանաչ, կարմիր աշխարհը» (1975), «Երկունք» (1976), «Նահապետ» (1977, 11-րդ միջազգ. կփ դիպլոմ, մրց.), «Խնձորի այգին» (1985), «Լռության սիմֆոնիան» (2000), «Ուղևորություն դեպ Հայաստան» (2006, Ֆրանսիա), «Այստեղ» (2009, ԱՄՆ), «Գարեգին Նժդեհ» (2013), «Մեր գյուղը» (հեռուստաֆիլմ, 2013) և այլ կինոնկարներում:

ՍԱՐԳՍՅԱՆ Սվետլանա Կորյունի (ծ. 1945), երաժշտագետ: Արվեստագիտ. դ-ր (1999), պրոֆ. (1996): ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (2009): Երաժշտ. գործիչների միջազգ. միության անդամ (2004-ից): Հեղինակ է «Ժամանակակից հայկական երաժշտության հարցեր (1960-ական թթ.)» (1983), «Հայկական երաժշտությունը XX դ-ի համատեքստում» (2002), «Արամ Խաչատրյան: Գիտական տեղեկատու» (2004, երեքն էլ՝ ռուս.) և այլ աշխ-ների:

ՍԱՐԳՍՅԱՆ Ստեփան Խալաթի (ծ. 1962), ըմբիշ: ԽՍՀՄ (1978), միջազգ. կարգի (1988) ս. վ.: Աշխարհի եռակի (1984, 1987, 1989) գավաթակիր, օլիմպ. խաղերի 2-րդ (1988) մրց.: ՀՀ ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ (1999–2002): 1992-ից անցկացվել են ըմբշամարտի Ս-ի անվ. միջազգ. մրցաշար:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2000):

ՍԱՐԳՍՅԱՆ Սուրեն Արտաշեսի (1924–2009), գվարդիայի սերժանտ: ԽՄ հերոս (1945): Հերոսի կոչման արժանացել է Դնեպրի գետանցման ժամանակ (1943-ի սեպտ.) ցուցաբերած խիզախության համար:

ՍԱՐԳՍՅԱՆ Սուրեն (Սուրիկ) Արտավազդի (ծ. 1946), փիլ.: Փիլ. գիտ. դ-ր (2002), պրոֆ. (2005): Աշխ-ները վերաբերում են XIX դ-ի հայ փիլ. և հաս-քաղ. մտքի պատմությանը, առաջադրել է «էթնոպատմամշակութային համակարգ» հասկացությունը՝ որպես պատմամշակութ. գործընթացների ուսումնասիրության ելակետ. սկզբունք:

ՍԱՐԳՍՅԱՆ Սուրեն Թարխանի (ծ. 1954), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (2015), պրոֆ. (2017): Հիմն. աշխ-ներն են՝ «Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն 1908–1921 թթ.» (2009), «1885–1908 թթ. Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ» (2010), «Արմենիա պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում» (2014)» ևն:

ՍԱՐԳՍՅԱՆ Վազգեն Զավենի (1959–1999), ռազմ., քաղ-պետ. գործիչ, գրող: Արցախ. ազատագր. շարժման ղեկ-ներից: Հայաստանի Ազգ. (1999), Արցախի (1999) հերոս: 1990–92-ին՝ «Երկրապահ» կամավոր. ջոկատների ընդհ. հրամ., 1993-ից՝ ԵԿՄ հիմնադիր-նախագահ: 1991–92 և 1995–99-ին եղել է ՀՀ պաշտպ-յան նախարար, 1993–95-ին՝ ուժային կառույցների համակարգման հարցերով պետնախարար: Ղեկավարել է ՀՀ կանոնավոր բանակի կազմավորման աշխ-ները: 1999-ի հունիսից՝ ՀՀ վարչապետ: Զոհվել է ՀՀ Ազ ժողիհ-ում հոկտ. 27-ին կատարված ոճրագործության ժամանակ:

Ս-ի անունով է կոչվել ՀՀ ՊՆ ռազմ. ակադ-ը, Հանրապետ. մարզադաշտը, 2003-ին ծննդավայրում (ՀՀ Արարատի մարզի գ. Արարատ) բացվել է տուն-թանգարան:

Հեղինակ է Ս-ի «Հացի փորձություն» (1987), «Ոգու փորձություն» (2000) արձակ գործերի:

ՀՀ «Հայրենիքի», ԼՂՀ «Ոսկե արծիվ» (երկուսն էլ՝ 1999, հետմահու) շքանշաններ:

ՍԱՐԳՍՅԱՆ Վահագն Մկրտչի (ծ. 1962), հրտ., գրականագետ: Բանասիր. գիտ. թեկնածու (1990): Մկրտիչ ***Սարգսյանի*** որդին, Դավիթ ***Սարգսյանի*** եղբայրը: 1988–90-ին և 1998-ից՝ «Հայաստան» հրտչ-յան տնօրեն: Հեղինակ է «Քաջ Նազարի գրական հետագիծը» (1991) աշխ-յան:

ՍԱՐԳՍՅԱՆ Վաղարշակ Բագրատի (1924–2004), նկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (1980): Հեղինակ է թեմատիկ պատկերների, բնանկարների, դիմանկարների («Խաղաղ բակ», 1956, «Առավոտ», 1964, «Հորատանցքի առջև: Երևանյան մետրո», 1978, «Գագիկի դիմանկարը», 1982, ևն), նատյուրմորտների շարքի («Ֆլորա» միջազգ. ցուցահանդեսի ոսկե մեդալ, 1973, Չեխոսլովակիա):

ՍԱՐԳՍՅԱՆ Վաղինակ Հայկազի (ծ. 1946), նյարդաֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ-ր (1993), պրոֆ. (2012): Աշխ-ները վերաբերում են ուղեղի անդաստակ. (վեստիբուլային) կորիզների սինապսային մեխանիզմների ուսումնասիրմանը: Ուղեղի ուսումնասիրության միջազգ. կազմ-յան (2003-ից), Եվրոպ. նյարդագիտ. ընկ-ների դաշնության (1997-ից) հայկ. բաժանմունքի նախագահ:

ՍԱՐԳՍՅԱՆ Վաչագան Ադիբեկի (ծ. 1951), գրող, խմբ.: 1994-ից՝ ***«9-րդ հրաշալիք»*** շաբաթաթերթի հիմնադիր-խմբ.: Հեղինակ է «Անցողիկ հավերժություն» (2001), «Այս տխրությունը ես չեմ հորինել» (2003), «Օրը՝ ինչպես որ տեսա» (2008), «Ժամանակը աչքերի վրա» (2011), «Բանաստեղծություններ» (2013) չափածո և արձակ գործերի ժող-ների, «Մենախոսություն երկուսով» (2008) վիպակի, նաև դասագրքերի, գիտահանրամատչելի ու գիտագեղ. գրքերի:

ՍԱՐԳՍՅԱՆ Վասիլ Նադոյի (1922–1968), գվարդիայի կապիտան: ԽՄ հերոս (1943): Եղել է տանկ. դասակի, 1944-ից՝ մոտոհետևակ. գումարտակի հրամ.: Հերոսի կոչման է արժանացել Դնեպրի գետանցման ժամանակ (1943-ի սեպտ.) ցուցաբերած խիզախության համար:

ՍԱՐԳՍՅԱՆ Վարդան Ալբերտի (ծ. 1962), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (2009), պրոֆ. (2011): Աշխ-ները վերաբերում են թվային ֆիրմայի կառավարման, նախագծերի ավտոմատ կառավարման, կորպորատիվ տեղեկատվ. համակարգերի խնդիրներին:

ՍԱՐԳՍՅԱՆ (Տեր-Սարգսյան) Վարդան Խորենի (1919–1964), ճարտ.: Արմեն ***Սարգսյանի*** հայրը: Հեղինակ կամ համահեղինակ է Երևանում՝ Հայկոոպի և ԱԳՆ (նախկին) շենքերի, Հանքավանում՝ պիոներ. ճամբարների համալիրի (1958) և մանկ. առողջարանի (1959), Սևանի ափին՝ «Աղթամար» հյուրանոց-ռեստորանի (1962), Իջևանում՝ հյուրանոցի և առևտրի կենտրոնի (1961) ևն:

ՍԱՐԳՍՅԱՆ Վարդան Սարգսի (1892–1978), կոմպոզիտոր, խմբավար: «Րաֆֆի»

միության երգչախմբի (1911, Սկյուտար), «Արմենիա» (1923, Բրյուսել), Հայկ. (1931, Մարսել) երաժշտ. ընկ-ների հիմնադիրը: Հ. Թումանյանի «Անուշ»-ի բեմադրության համար ստեղծել է մի քանի երգ. հատվածներ, մշակել է հայկ. ժող. երգեր, դաշնավորել «Արևագալի երգերը», կազմել հայ հոգևոր երաժշտության ժող-ներ, Փարիզում մասնակցել Կոմիտասի անտիպ երգերի և «Պատարագի» հրատարակման աշխ-ներին:

ՍԱՐԳՍՅԱՆ (Սարկիսով) Վարդան Ստեփանի (1875–1955), ճարտ.: Ադրբեջանի գիտ. (1941), արվ. (1950) վաստ. գործիչ: Պրոֆ. (1931): Հեղինակ է Բաքվում բնակելի, վարչ., հաս. շենքերի (1930), Մարդակյանում՝ նավթագործների առողջարան. համալիրի նախագծերի:

ՍԱՐԳՍՅԱՆ Վիլլի Վահանի (ծ. 1930), դաշնակահար, մանկավարժ: ՀՀ վաստ. արտիստ (1978): Պրոֆ. (1986): Հայ կոմպոզիտորների որոշ դաշնամուր. երկերի առաջին կատարողը: Կազմել և խմբագրել է Ա. Ադամյանի «Հոդվածներ գեղագիտության մասին» (ռուս., 1967) ժող-ը:

Երիտասարդության և ուսանողների համաշխ. VI փառատոնի (1957, Մոսկվա), անդրկովկաս. մրցույթի (1960, Բաքու, 1-ին մրց.) դափնեկիր:

ՍԱՐԳՍՅԱՆ Վիլհելմ Հովհաննեսի (ծ. 1944), ջրաբանության բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (2003), պրոֆ. (2006): Աշխ-ները վերաբերում են Հայաստանի ջր. պաշարների գնահատման, կանխատեսման, գետերի հոսների ձևախախտումների, մակերևութ. և ստորերկրյա ջրերի կապի, Սևանա լճի հաշվեկշռի կարգավորման հարցերին:

ՍԱՐԳՍՅԱՆ Վիկտոր Վլադիմիրի (ծ. 1947), բալետի արտիստ: ԲԽՍՀ ժող. արտիստ (1975): 1967-ից՝ Մինսկի ՕԲԹ-ի մենապարող: Գլխ. դերապարերով հանդես է եկել Հ. Վազների «Պարահանդեսից հետո», Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ», Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճը» և այլ բալետներում: Միջազգ. մրցույթի (1969, Մոսկվա) դափնեկիր:

ՍԱՐԳՍՅԱՆ Վլադիմիր Սարգսի (1935–2013), մեխանիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1973), պրոֆ. (1974): ՀՀ ԳԱԱ (1996), ՄՃԱ (1994), ՀՃԱ (1994) ակադ., ՀՀ գիտ. վաստ. գործիչ (1981): Սամվել *Սարգսյանի* հայրը: Աշխ-ները վերաբերում են անիզոտրոպ անհամասեռ մարմնի առաձգականության տեսությանը, առաձգ. մարմինների լարված. վիճակի հետազոտմանը: Ստեղծել է անհամասեռ անիզոտրոպ մարմնի գիտ. դպրոց: Տես. և կիրառ. մեխանիկայի հայկ. ազգ. կոմիտեի նախագահ (1996), Ֆրանսիայի «Արարատ» միջազգ. ԳԱ թղթ. անդամ (1998):

ՀՀ «Անանիա Շիրակացի» (1999), Բրատիսլավայի համալսարանի Յ. Կամենսկու անվ. (1983), ԵՊՀ ոսկե (2005) մեդալներ, ՀՀ վարչապետի հուշամեդալ (2009), ՀՀ ԳԱԱ «Վաստակագիր» (2005):

ՍԱՐԳՍՅԱՆ Վրույր Սարգսի (ծ. 1935), ճարտարագետ-ջրաշինարար: Տեխ. գիտ. դ-ր (1981), պրոֆ. (1983): Աշխ-ները վերաբերում են ջրաերկրբ-յանը, գրունտների լարված. վիճակի փոփոխմանը ստորգետնյա ջրերի հորիզոնի իջեցման դեպքում: Առաջարկել է ծակոտկեն միջավայրում 2 տարբեր հեղուկների շարժման դիֆերենցիալ հավասարումների համակարգեր:

ՀՀ «Անանիա Շիրակացի» մեդալ (2015):

ՍԱՐԳՍՅԱՆ Տիգրան Սուրենի (ծ. 1960), քաղ. գործիչ, տնտեսագետ: ՀՀ վարչապետ՝ 2008–14-ին: Տնտեսագիտ. թեկնածու (1987): 1995–98-ին՝ Հայաստանի բանկերի ասոցիացիայի, 1998–2008-ին՝ ՀՀ կենտր. բանկի նախագահ, 2014–16-ին՝ ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան ԱՄՆ-ում, 2016-ից՝ ԵՏՄ տնտ. հանձնաժողովի կոլեգիայի նախագահ:

ՀՀ «Անանիա Շիրակացի» (2004), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի (2012) մեդալներ:

ՍԱՐԳՍՅԱՆ Ֆադեյ Տաճատի (1923–2010), պետ-քաղ. գործիչ, կառավարման համակարգերի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1975): ՀՀ ԳԱԱ ակադ. (1977), գեն-մայոր, ՀԽՍՀ ՆԽ նախագահ (1977–89), ԵրՄՄԳԻ տնօրեն (1966–77), ՀՀ ԳԱԱ ֆիզ. գիտ-յունների ու մեխանիկայի բաժանմունքի ակադ. քարտուղար (1989–93), նախագահ (1993–2006): Աշխ-ները վերաբերում են ռադիոտեղորոշման, ռադիոէլեկտրոնիկայի, հաշվող. տեխնիկայի, ԱԿՀ ստեղծման ու արտադր-յան մեջ ներդրման խնդիրներին:

Մի շարք միջազգ. ԳԱ-ների անդամ:

ԽՍՀՄ (1971,1981) և Ուկր. ԽՍՀ (1986) Պետ. մրց-ներ, Լենինի (1981), ԽՍՀՄ Հոկտ. հեղ-յան (1971), Աշխ. կարմիր դրոշի (1965, 1976, 1986), ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշաններ, ՌԲՆԳԱ պատվո մեդալ (2002), Հաննովերի (Գերմանիա) բնական գիտ-յունների ու արվ-ների ինստ-ի «Ոսկե թագ» աստղ (2002): Երևանի պատվ. քաղաքացի (2006):

ՍԱՐԳՍՅԱՆ Ֆելիքս Պարգևի (ծ. 1954), սեղանի թենիսիստ: ԽՍՀՄ (1969), միջազգ. կարգի (1978) ս. վ., ՀՀ վ. մ. (1990), միջազգ. կարգի մրցավար (2001): Եվրոպայի կրկնակի (1968, 1969) չեմպիոն:

ՍԱՐԳՍՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ, գործում է 1973-ից Երևանում՝ եռահարկ շենքի 2-րդ հարկում, ունի պարապապատ բակ: ՀԱՊ-ի (Երևան) մասնաճյուղերից է: Թանգարանում պահվում և ցուցադրվում են Արա *Սարգսյանի* ստեղծած դիմաքանդակներից, «Մայր Հայաստան» հուշարձանի, «Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց» խմբաքանդակի գիպսե բնօրինակները, արձանիկներ, մեդալիոններ, գրաֆիկ. աշխ-ներ, թատեր. ձևավորման էսքիզներ, նաև փաստաթղթեր, անձն. իրեր:

ՍԱՐԳՍՅԱՆՑ Արմենակ Սարգսի (1872–1939), ճարտարագետ: Երվանդ *Սարգսյանցի* հայրը: 1922–27-ին՝ Ալավերդու գործարանների և հանքերի միավորման տնօրենն, 1928–31-ին՝ Խարկովի մետաղաձուլ. գործարանների նախագծման պետ: Ս-ի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ 1900–01-ին, Ռուսաստանում 1-ին անգամ, իրականացվել է ֆեռոմանգանի և սիլիցիումի հալումը, նախագծվել, կառուցվել և նորոգվել են դոմնային վառարաններ: Մշակել է դոմնային գազի բաղադրության հաշվարկի մեթոդ:

ՍԱՐԳՍՅԱՆՑ Երվանդ Արմենակի (1913–1972), ճարտարագետ, տրակտորաշինարար: Արմենակ *Սարգսյանցի* որդին: DT-54 տրակտորի կոնստրուկտորներից: Նրա ղեկավարությամբ մշակվել և շահագործման է հանձնվել օդ. հովացումով դիզել. շարժիչները: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950), ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան:

ՍԱՐԴԱԿԵՐՊՆԵՐ (Arachnoiden), խելիցերայինների ենթատիպի հոդվածոտանիների դաս: Երկ.՝ 0,1 *մմ*–17 *սմ*: Ընդգրկում է հետևյալ կարգերը՝ կարիճներ, պալպիգրադներ, կեղծ կարիճներ, սոլպուգներ, խոտհունձներ, սարդեր, ոիցինուլեյներ, տելիֆոններ, ֆրիններ, տարտարիդներ և տզերի 3 կարգ: Հայտնի է մոտ 60 հզ.:

ՍԱՐԴԱՐ (պարսկ.՝ sardär – գլխ., զորապետ, ընդհ. հրամ.), 1. խոշոր զորաբանակի հրամ. միջնադար. Իրանում: 2. Դաշտ. բանակների հրամ-ի տիտղոս Օսմ. կայսրությունում: 3. Եգիպտոսում թուրք. կառավարչի բանակը ղեկավարող բրիտանացի սպա անգլ. տիրապետության ժամանակաշրջանում: 4. Ցեղապետներ Աֆղանստանում: 5. Մինչև XIX դ-ի կեսը սիքհերի զորահրամ-ները և սիքհերի ավատ. խավի ներկայացուցիչները Հնդկաստանում:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ, բերդ այժմյան Արմավիրի մարզի Նոր Արմավիր գ-ի մոտ (անցյալում՝ Սարդարապատ): 1819-ին հիմնադրել է Երևանի սարդարի եղբայր Հասան խանը: Քառանկյուն և քառադարպաս բերդը շրջափակվել է կրկնակի պարիսպներով և ամրացված է հսկա աշտարակներով: Աստիճանաբար ամայացել և դարձել է ավերակ:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ, ՀՀ Արմավիր ք-ից 10 *կմ* հվ-արմ.: Բացվել է 1968-ին՝ *Սարդարապատի ճակատամարտի* 50-ամյակի առթիվ (ճարտ.՝ Ռաֆայել Իսրայելյան, քանդ-ներ՝ Արա Հարությունյան, Արշամ Շահինյան, Սամվել Մանասյան): Գերիշխողը 35 *մ* բարձր-յան, 4 մոյթերով եռայարուս զանգաշտարակն է՝ 9 զանգերով, որից 200 *մ* արլ. հաղթանակի պատն է («Հաղթանակ», «Վերածնունդ» քանդակներով): Համալիրում են նաև «Արծիվների ճեմուղին», Հայոց ազգագրության և ազատագր. պայքարի պատմության ազգ. թանգարանը (1974–77, ճարտ.՝ Ռ. Իսրայելյան), զբոսայգին, «Վարդավառ» ռեստորանը, արհեստ. լիճը ևն:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1918, հայկ. կանոնավոր զորամասերի, աշխարհազորի և Արլ. Հայաստան ներխուժած թուրք. զորաբանակի միջև մայիսի 21–29-ին Սարդարապատ կայարանի շրջակայքում: Թուրք. զորաբանակը Յաղուբ Շևքիի փաշայի գլխավորությամբ հարձակվել է Սարդարապատի ուղղությամբ՝ Երևան ներխուժելու նպատակով: Սարդարապատի պաշտպ-յունը Թովմաս *Նազարբեկյանը* հանձնարարել էր Մովսես *Միլիկյանին*: Սարդարապատի զորախմբի հրամ. էր Դանիել բեկ Փիրումյանը: Թիկունքի և Երևանի պաշտպ-յունը ղեկավարում էր Արամ *Մանուկյանը*: Մայիսի 21-ին թշնամին գրավել է Սարդարապատ կայարանն ու համանուն գյուղը: Հաջորդ օրը հայկ. ուժերը վերագրավել են վերոնշյալ բնակավայրերը, հարկադրել թուրքերին նահանջել շուրջ 15–20 *կմ*: Աչքի է ընկել գնդ. Պողոս բեկ *Փիրումյանը*: Հակառակորդը փորձել է համալրել Յաղուբ Շևքիի զորքը, սակայն հայերը հետ են շպրտել օգնության եկող Մյուրսել փաշայի դիվիզիան: Ս. ճ. ավարտվել է թուրք. գերակշիռ ուժերի դեմ հայերի տարած լիակատար հաղթանակով: Տես նաև *Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր*:

ՍԱՐԴԱՐԻ ԱՂԲՅՈՒՐԻ ԼԵՌՆԱՆՁՔ, Անահիտական լեռնանցք (Անահիտ աստվածուհու անունով), Մեծ և Փոքր Մասիսների միջև՝ Ակոռի գ-ի մոտ՝ 2727 *մ* բարձր-յան վրա: Կան ստորգետնյա ջրերի

ելքեր: Եղել է Երևանի խանության կառավարիչների՝ սարդարների ամառանոցը: Այստեղով անցնում է Երևան–Մակու ճանապարհը:

ՍԱՐԴԱՐՅԱՆ Վոլոդյա Սարդարի (ծ. 1936), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1971), պրոֆ. (1975): Աշխ–ները վերաբերում են պինդ մարմնի ֆիզիկայի տես. հարցերին, ոչ գծային ալիքների և տատանումների ստոխաստիկ անկայունության և սոլիտոնների տեսությանը:

ՍԱՐԴԱՐՅԱՆ–ԱՐԵՎՇԱՏՅԱՆ Ադամ Թովմասի (1856–1913), դերասան, դրամատուրգ, թարգմանիչ: 1879–1900–ին՝ Թիֆլիսի Հայոց մշտ. դերասան. խմբի տեխ. ռեժ. և դերասան: Հեղինակ է «Օրթաճալու քեֆը» (Սաքուլի դերում՝ Ս–Ա.), «Հեղինակը փորձին» և այլ վոդևիլների, Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար» (Օգսենի դերում՝ Ս–Ա.), «Ղարաբաղի աստղագետը» (ըստ Պ. Զուբովի) և այլ գործերի բեմավորում–ների ու թարգմ–յունների:

ՍԱՐԴԱՐՈՎ Սերգեյ Արշակի (1909–1987), ավիացիայի գեն–գնդ. (1965): 1940–ից եղել է կործանիչ ավիագնդի հրամ., 1944–ի վերջից՝ կործանիչ ավիացիոն դիվիզիայի փոխհրամ.: 1945–ին մասնակցել է Ռումինիայի ազատագրմանը: Հետպատերազմյան տարիներին՝ ավիացիոն դիվիզիայի (մինչև 1950–ը), ավիացիոն միավորման (1952–56) հրամ., ՀՕՊ–ի ռազմահրամ. ակադ–ի (Գ. Ժուկովի անվ.) պետի տեղակալ: Զորացրվել է 1971–ին:

ՍԱՐԴԵՍ, **Սարդիս**, հնագույն ք. Փոքր Ասիայում (այժմ՝ գ. Սարտ, Թուրքիայում): *Լիդիայի* մայրաքաղաքը՝ մ. թ. ա. VII դ.–մ. թ. ա. 546–ին: Վերելք է ապրել *Կրեսոսի* ժամանակ: Դարեհ I–ի կառուցած *արքայական ճանապարհը* Ս. կապել է Էլամի Շոշ ք–ի հետ, որի շնորհիվ Ս. առևտր. հարաբերությունների մեջ էր արլ. երկրների, այդ թվում՝ Հայաստանի հետ: 1402–ին ավերել է Լանկ Թամուրը:

ՍԱՐԴԵՐ (Aranei), *սարդակերպների* դասի հոդվածոտանիների կարգ: Երկ.՝ 0,7 *մմ*–11 *սմ*: Հայտնի է 27 հզ. տեսակ, ՀՀ–ում՝ 300–350 (տնային, թռչնակեր Ս., խաչասարդ, ջրասարդ ևն): Մի շարք տեսակներ կառուցում են բարդ, որսացող ցանցեր, բներ, որջիկներ: Գիշատիչ են, սնվում են միջատներով և այլ անողնաշարներով: Որոշ տեսակների բնորոշ է կանիբալիզմը: Մի շարք տեսակներ, հատկապես՝ արևադարձ., թունավոր են (կարակուրտ, խաչասարդ, մորմ ևն):

ՍԱՐԴԻՆԱՅԻՆԵՐ (ինքնանվանումը՝ սարդոս), ժողղ, Սարդինիա կղզու հիմն. բնակչությունը, երբեմն ներառվում են իտալացիների կազմում: Թվաքանակը՝ 1,6 մլն (2010): Լեզուն՝ սարդիներեն: Հավատացյալները կաթոլիկ են:

ՍԱՐԴԻՆԵՐԵՆ, Սարդինիայի պետ. լեզուն (XI–XIV դդ.): Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի ռոման. ճյուղին: Հնագույն գրավոր հուշարձաններն ավանդվել են XVI դ–ից: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՍԱՐԴԻՆԻԱ (Sardegna), կղզի Միջերկր. ծովում՝ Ապենինյան կղզուց արմ.՝ Իտալիայի կազմում: Տարածքը՝ 24 հզ. *կմ*²: Բն.՝ 1,7 մլն: Լեռնային է, բարձր.՝ 1834 *մ*: Ծածկված է քսերոֆիտ թփուտներով, կա կաղնու թավուտ: Հիմնականում զբաղվում են ձկնաբուծությամբ: Գլխ. ք–ը՝ Կալյարի:

ՍԱՐԴԻՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, պետություն Իտալիայում՝ 1720–1861–ին: Կազմավորվել է *Սարդինիա* կղզին Սավոյայի դքսությանը միանալուց հետո: Միջուկը *Պիեմոնտն* էր: Կառավարել է Սավոյական հարստությանը: 1861–ի մարտի 17–ին Ս. թ. պաշտոնապես անվանվել է Իտալ. թագավորություն:

ՍԱՐԴԻՆՆԵՐ (Sardina), **սարդինաձկներ**, ծովատառեխների ընտանիքի ծով. ձկների 2 սեռերի հավաքական անվանումը: Երկ.՝ մինչև 35 *սմ*, կ. զ.՝ 110–150 (երբեմն՝ մինչև 600) *գ*: Հայտնի է 2 տեսակ՝ Ատլանտ., Խաղաղ և Հնդ. օվկ–ների առափնյա ջրերում, այդ թվում՝ Սև և Ազովն. ծովերում: Արդյունագործ. կարևոր ձուկ է:

ՍԱՐԴՈՍՏԱՅՆԱՏԶԵՐ, ակարիֆորմների կարգի տզերի վերնաընտանիք: Երկ.՝ 0,3–1 *մմ*: Հայտնի է 5 ընտանիքի մոտ 800 տեսակ: Մակաբուծում են բույսերի տերևներին և ցողուններին. դրանք հյուսապատում են ոստայնով և արտածծում բջջահյութը: Որոշ տեսակներ մշակաբույսերի վնասատուներ են (օր.՝ սովոր. Ս., կարմիր պտղատիզը):

ՍԱՐԴՈՒԽԻ Ա., **Սերդուրի** (ծ. թ. անհտ–մ. թ. ա. 824), Վանի թագավորության թագավոր՝ 835–ից: Հաջորդել է հորը՝ *Լուտիպրիին*: Դիմակայել է Ասորեստանի հարձակումներին, ընդարձակել և ամրապնդել է պետության սահմանները: Միավորել է Վանա լճի ավազանի երկրները և հիմնադրել *Տուշպան*:

ՍԱՐԴՈՒԽԻ Բ (ծ. թ. անհտ–մ. թ. ա. մոտ 735), Վանի թագավորության թագավոր՝ մ. թ. ա. 764–ից: *Արգիշտի Ա*–ի որդին, գահակիցը և հաջորդը: Գլխ. հակառակորդին՝ Ասորեստանին, դուրս է մղել Հս. Ասորիքից ու Հս. Միջագետքից, իր գերիշխանությունը հաստատել մի շարք երկրների վրա: *Թիգլաթպալասար III*–ը թեև կարողացել է Ս. Բ–ից խլել Անձիտ գվո–ը և հարակից որոշ տարածք, սակայն նրան չի հաջողվել սասանել պետության հզորությունը:

ՍԱՐԴՈՒԽԻ Գ, Վանի թագավորության թագավոր՝ մ. թ. ա. 640–620–ին: *Ռուսա Բ*–ի որդին և հաջորդը: Ենթադրվում է, որ Ս. Գ–ի օրոք թուլացել է երկրի հզորությունը, և նա բարիդրացիական հարաբերություններ է պահպանել Ասորեստանի հետ:

ՍԱՐԵԶ ԼԻՃ, Պամիրում՝ 3263 *մ* բարձրյան վրա (Տաջիկստան): Մակերեսը՝ 7679,64 *կմ*², խոր.՝ մինչև 500 *մ*: Առաջացել է Մուրգաբ գետի հովտում 1911–ի երկրաշարժի ժամանակ՝ փլուզումների հետևանքով:

ՍԱՐԵՅԱՆ Արտավազդ Հայկի (ծ. 1954), խմբ., բանաստեղծ, թարգմանիչ: 1991–ից՝ *«Համշեն»* պարբ–ի հիմնադիր–խմբ.: 2012–ից՝ Աբխազիայի հանրային պալատի անդամ: Հեղինակ է բանաստեղծությունների ժող–ների, կազմել է «Գրական Համշեն» (2012) ալմանախը, թարգմ–յուններ է արել աբխազ–ից:

ՍԱՐԵԼԱՍԼԱՆ Իգնա (ծ. 1945), բանաստեղծ, բանասեր, բժիշկ: Հեղինակ է «Լօ» (1974, ՀԲԸՄ Ալեք Սանուկյան մրց.), «Քառասմբակ սէրերով» (1944, ԹՄՄ Հայկաշեն Ուզունյան մրց.), «Սիրոյ գոյներ» (1998) ժող–ների, «Կիսամեայ յուշամատեան...» (1990), «Սրբուհի Տիւսաբի հետքերուն վրայ» («Մարմարա», 2006) աշխ–ների:

ՍԱՐԵՅԱՆ Մկրտիչ (1853–1901), հաս–կրթ. գործիչ: 1879–ին Ս–ի նախաձեռնությամբ Մուշում բացվել է Կեդրոն. վարժարանը (նշանակվել է ընդհ. տեսուչ), նաև օրիորդաց դպրոց: Եղել է *Միացյալ ընկերություն հայոցի* վարչության անդամ: Ենթարկվել է հալածանքների, 1886–ին ձերբակալվել է, 1897–ին ազատվել համաներմամբ: Հաստատվել է Զմյուռնիայում, եղել Մեսրոպյան և Հռիփսիմյան վարժարանների տնօրեն:

ՍԱՐԹԱՋԱՁ, լ–շղթա Կենտր. Տյան Շանում, հիմնականում՝ Ղրղըզստանում: Երկ.՝ 110 *կմ*, բարձր.՝ մինչև 6261 *մ*: Կան սառցադաշտեր:

ՍԱՐԻ (սանսկրիտ), կանանց հագուստ Հվ. Ասիայում, կտորի շրջագիծը՝ 5–9 *մ* x 1 *մ*, փաթաթում են մարմնին: Ս. կրելը կատարվում է հինդուիզմի կանոններով:

ՍԱՐԻ ՉԱՄԻԶ, **լեռնաչամիչ**, սարիչամիչազգիների ընտանիքի մշտադալար ծառերի ու թփերի ցեղ: Հայտնի է 45 տեսակ՝ հիմնականում Միջերկրածովայքում: Պարունակում է ալկալոիդներ (էֆեդրին ևն):

ՍԱՐԻ ՎԱՆՔԻ ԴՊՐՈՑ, ուս. և գրչության կենտրոն Վասպուրականում: Գործել է XIV դ–ի 2–րդ կեսին Փութկա Սր Գևորգ վանքում (Արտոս լ–շղթայի Եղերով լ–ան արլ. լանջին): Վերելք է ապրել Սիմեոն Բարունապետի օրոք (1350–80–ական թթ.): Այնտեղ սովորելու են եկել Աղթամարից, Ռշտունիքից և այլ վայրերից: Ս. վ. դ–ից մեզ է հասել շուրջ 15 ձեռագիր (8–ը՝ Մոնդ–ում):

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ Իշխան Բարսեղի (1912–1990), ավազ սերժանտ: ԽՄ հերոս (1945): Հերոսի կոչման է արժանացել Ղրիմի ազատագրման մարտերում (1944–ի մայիս, Սապուն Գորայի մոտ) ցուցաբերած խիզախության համար:

ՍԱՐԻԳՅՈՒՂԻ ԱԳԱԹԻ ՀԱՆՔՎԱՅՐ, ՀՀ Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանի Սարիգյուղ և Սևքար գ–երի շրջակայքում: Մոտավորապես 6 *կմ*² մակերեսով տարածքում 1931–ին հայտնաբերվել են մի շարք տեղամասեր: Ագաթ. հորիզոնը ներկայացված է նշաքար. անդեզիտ. պորֆիրիտներով: Դայքերը ձգվում են մինչև 150 *մ* և ունեն 0,3–8 *մ* հաստ.: Ագաթի գեղեցիկ տարբերակներն օգտագործվում են որպես զարդաքար:

ՍԱՐԻԳՅՈՒՂԻ ԲԵՆԹՈՆԻՏԱՅԻՆ ԿԱՎԵՐԻ ՀԱՆՔՎԱՅՐ, ՀՀ Տավուշի մարզում՝ Սարիգյուղից 3 *կմ* արևելք: Հայտնի է հնագույն ժամանակներից, հետազոտվել է 1960–ին, շահագործվում է 1964–ից: Ներփակող ապարների հետ առաջացնում է 5–130 *մ* հաստությամբ շերտանման կամ ոսպնյականձև կուտակներ: Կավերն առաջացել են տուֆերից, պորֆիրիտներից և դրանց սիլերից ու շտոկներից՝ ջրաջերմային լուծույթների ազդեցությամբ: Օգտագործվում են տնտ–յան տարբեր (պողպատաձուլություն, նավթի, սննդի, քիմ. արդ–յուն ևն) բնագավառներում:

ՍԱՐԻԿՅԱՆ Սիրանույշ Հակոբի (1908–1979), մալարիաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1964): Աշխ–ները վերաբերում են ԽՍՀՄ տարբեր գոտիներում խոշոր ջրամբարների շահագործման պայմաններում, նաև հեռավոր նավարկությունների ժամանակ մալարիայի բռնկումների դեմ պայքարի միջոցառումների մշակմանը:

ՍԱՐԻԿՈՒՂՅԱՆ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Պամիրում, Չինաստանի և Տաջիկստանի սահմանի երկ–յամբ: Բարձր.՝ 6351 *մ* (Լյավիդդիր լ.): Թարիմ և Ամուդարյա գետերի և Կարակուլ լճի ջրբաժանն է: Սառցադաշտի տարածքը՝ 132 *կմ*²:

ՍԱՐԻԿԱՄԻՇ, ք. *Կարսի մարզում*՝ Մեծրաց լ–ների հվ. ստորոտին՝ Կարուց գետի վերին հոսանքի՝ Եղեգնուտի աջ ափին: 1877–ին Ս. գրավել են ռուս. զոր–

քերը և հայկ. կամավոր. ջոկատները: 1913–ին ավարտվել է Կարս–Ս. երկթղ–ու կառուցումը, որը նպաստել է Ս–ի տնտ. վերելքին: Օգտվելով ռուս. ռազմաճակատի քայքայումից՝ թուրք. զորքերը 1918–ի ապրիլին տիրել են Ս–ին, իսկ 1919–ի ապրիլին նահանջել են Կարսի մարզից, 1920–ի սեպտ. 29–ին վերստին զավթել են Ս.: Կարսի պայմանագրով (1921) թողնվել է Թուրքիայի կազմում: Տես նաև ***Սարիղամիշի ռազմագործողություն 1914–15***:

ՍԱՐԻՂԱՄԻՇԻ ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1914–15, ռուս. Կովկասյան բանակի մարտ. գործողություն Սարիղամիշի շրջանում դեկտ. 9(22)–հունվ. 4(17)–ին: Թուրք. 3–րդ բանակի հրամանատարությունը (գլխ. հրամ.՝ գեն. Էնվեր փաշա, շտաբի պետ՝ գերմանացի գեն. Ֆ. Բրոնզարտ ֆոն Շելլենդորֆ) որոշել էր շրջապատել և ոչնչացնել Կովկասյան բանակի (գլխ. հրամ.՝ գեն. Ի. Վորոնցով–Դաշկով, փոխտացի հրամ–ն էր՝նրա օգնականը՝ գեն. Ա. Միշլանսկին) գլխ. ուժերը՝ Սարիղամիշի զորախմբերը, զավթել են Կարսը, ապա՝ Անդրկովկասը: Ս. ռ–յանը մասնակցած թուրք. 110–հզ–անոց բանակից Էրզրում է հասել 12 հզ. մարդ: Ռուս. կողմը կորցրել է 20 հզ. մարդ (6 հզ.՝ ցրտահարված): Ռուս. զորքերի կազմում կռվել են հայկ. կամավոր. ջոկատներ:

ՍԱՐԻՆՅԱՆ Ռոբերտ Ներսեսի (ծ. 1940), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1985), պրոֆ. (1987): Սերգեյ ***Սարինյանի*** եղբայրը: Աշխ–ները վերաբերում են հայ տնտեսագիտ. մտքի և տնտեսագիտ. ուսմունք՝ների պատմության, տնտեսագիտ. տեսության և ազգ. տնտ–յան խնդիրներին:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2003), ՀԽՍՀ ԳԽ նախագահության պատվոգիր (1983):

ՍԱՐԻՆՅԱՆ Սերգեյ Ներսեսի (1924–2017), գրականագետ–քննադատ: Բանասիր. գիտ. դ–ր (1967), պրոֆ. (1970): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, 1980–ից՝ թղթ. անդամ): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (1985): Ռոբերտ ***Սարինյանի*** եղբայրը: Հեղինակ է «Քննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ» (1955), «Հայկական ռոմանտիզմ» (1966), «Գեղարվեստական գրականության պատմականությունը» (1979) և այլ աշխ–ների, «Րաֆֆի» (1957), «Մուրացան» (1976), «Լևոն Շանթ» (1991), «Հայ գաղափարաբանություն» (1998), «Շարունակվող լեգենդ» (2008) մենագրությունների: Մասնակցել է «Հայ նոր գրականության պատմություն» (հ. 1–5, 1962–79, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1980) բազմահատորյակի հրատարակմանը:

ՍԱՐԻՉԵՎ Գավրիիլ Անդրեևիչ (1763–1831), ռուս. ջրաբան, աշխարհագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. անդամ (1809): Ծովակալ (1829): 1785–94–ին Ի. Ի. Բիլինգսի հետ հետազոտել է Հս–արլ. Սիբիրի, Ալեության կղզիների ափերը, առանձին՝ Վերխոյանսկի լ–շղթան, Յանո–Օյմյակոնյան բարձրավանդակը, հայտնագործել է Մոմյան լ–շղթան ևն: Ս–ի անունով է կոչվել գործող հրաբուխ Կուրիլյան կղզիներում (Մատուա կղզում): Բարձր.՝ 1446 *մ*:

ՍԱՐԻՎԱՆ, ք. Կորեայի ԺԴՀ–ում, Հս. Հվանհե պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 162,64 հզ. (2010): Մերձակայքում գործում է ցեմենտի խոշոր գործարան:

ՍԱՐԻՈՇԵՎ Սերգեյ Աբրահամի (1913–1991), ասորի լեյտ.: ԽՄ հերոս (1944): Հերոսի կոչման արժանացել է Դնեպրի գետանցման ժամանակ (1943–ի սեպտ.) ցուցաբերած խիզախության համար:

ՍԱՐԻՈՇՅԱՆ Ժակլին (Ժակելինա) Սամվելի (ծ. 1975), բալետի արտիստուհի: ՀՀ վաստ. արտիստուհի (2013): 1997–2016–ին՝ ԵՕԲԹ–ի մենապարուհի (Ժիզել՝ Ա. Ադանի «Ժիզել», Կարմենն՝ Ժ. Բիզե–Ռ. Շչեդրինի «Կարմենն–սյուիտ», Դեզդեմոնա՝ Զ. Վերդիի «Օթելլո», Նունե, Գայանե, Ֆրիգիա՝ Ա. Խաչատրյանի «Գայանե», «Սպարտակ», ևն): ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալներ:

ՍԱՐԿԱԶՄ (հուն.՝ sarkasmos – բառացի՝ միսը պոկել), կատակերգականի տեսակ, սպանիչ ծաղր պարունակող դատողություն: Հեգնանքի բարձրագույն աստիճանը, որով սկզբնախոսքից անմիջապես հետո բացահայտվում է երևույթի բացասական կողմը: Ս–ով են հագեցած Հ. Պարոնյանի, Ե. Օտյանի մի շարք երկեր:

ՍԱՐԿԱՎԱԳ, **սարկավագություն**, ՀԱԵ նվիրապետության ստորին՝ 6–րդ աստիճանը: Ս. եկեղեցու և Սբ Սեղանի գլխ. սպասավորն ու ձեռնադրված պաշտոնյան է: Ս–ները կարող են լինել կուսակրոն և ամուսնացած:

ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՐԴԱԿՑԻ, **Բերդակցի**, XVII դ–ի տաղերգու: Գրել է սիրո, բնության, գինու և ուրախության թեմաներով երգեր: Ս. Բ–ուց պահպանվել է «Գովասանութիւն խաղողոյ, բաժակի, այլև վասն ուրախութեան» տաղը (Մտնդ., ձեռ. № 3081): Նրան է վերագրվում «Թագուհի մը ես տեսայ» սկսվածքով ժող. երգը, ինչպես նաև Ֆրիկի «Գանգատի» տարբերակներից մեկը՝ «Սարկաւագ վարդապետի ասացեալ մարտ ընդ Աստուծոյ»:

ՍԱՐԿԻՍՈՎ Ալեքսանդր Ալեքսանդրի (ծ. 1936), ավիակոնստրուկտոր: Տեխ. գիտ. դ–ր (1991), պրոֆ. (1990): ՌԴ գիտ. վաստ. գործիչ (1996): Եղել է ԽՍՀՄ ավիացիայի 3–րդ գլխ. վարչության գլխ. կոնստրուկտոր (1983–87), Ս. Պետերբուրգի Վ. Յ. Կլիմովի անվ. գործարանի գլխ. կոնստրուկտոր (1988–2003): Աշխ–ները վերաբերում են ինքնաթիռների, ուղղաթիռների, թռիչք. ռազմ. տեխնիկայի (անօդաչու թռչող սարքեր) համար շարժիչների ստեղծման ու արդիականացման հարցերին:

ՌԴ տրանսպորտի (1993), ավիացիայի և օդագնացության (1995) ակադ–ների, ՌՃԱ (1995), Օդագնացության և աստղագիտ–յան ամերիկ. ինստ–ի (1997) անդամ:

Լենինյան (1984), Լոուրենսի (1991, ԱՄՆ), ՌԴ Ն. Ե. Ժուկովսկու (1994), Վ. Յ. Կլիմովի (1996) անվ. մրց–ներ, ԽՍՀՄ Հոկտ. հեղ–յան (1971), Աշխ. կարմիր դրոշի (1976) շքանշաններ:

ՍԱՐԿԻՍՈՎ Աշոտ Առաքելի (ծ. 1924), ռազմ. տեխնիկայի բնագավառի գիտնական, ռազմ. գործիչ: Տեխ. գիտ. դ–ր (1968), պրոֆ. (1969): Դերծովակալ (1972), փոխծովակալ (1978): ՌԴԱ ակադ. (1994, թղթ. անդամ՝ 1978–ից): Աշխ–ները վերաբերում են նավերի միջուկ. էներգետիկ. կայանքների, ստորգետնյա ատոմ. էլեկտրակայանների ստեղծման, շահագործման, ճառագայթ. և էկոլոգ. ռիսկերի խնդիրներին: Ռադիոակտիվ թափոնների միջազգ. ծրագրերի փորձագիտ. խորհրդի (1988–ից), ՌԾՆ գիտատեխ. կոմիտեի (1985–89)նախագահ, ՌԴԱ–ԱՄՆ ԳԱ Միջուկ. զենքի չտարածման ռուս–ամերիկ. համագործակցության զարգացման հիմնահարցերի կոմիտեի համանախագահ (2006–15): ՀՄՊ 1–ին (1985), 2–րդ (1944) աստիճանների, ԽՍՀՄ Կարմիր աստղի (1944, 1956, 1982), «Պատվո նշան» (1975), ՌԴ «Պատվո նշան» (1999), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 4–րդ (2004) և 3–րդ (2010) աստիճանների շքանշաններ:

ՍԱՐԿԻՍՈՎ Բարկեն Եսայու (1913–1999), կուս., պետ. գործիչ: 1975–85–ին՝ ՀԽՍՀ ԳԽ նախագահության նախագահ: 1955–ին՝ ՀԿԿ ԿԿ քարտուղար: 1966–70–ին՝ ՀԽՍՀ ավտոմոբիլ. տրանսպորտի նախարար, 1970–75–ին՝ ՆԽ գների պետ. կոմիտեի նախագահ:

ՍԱՐԿԻՍՈՎ Գևորգ Իլյայի (1904–1977), ճարտարագետ–տեխ. ծառայության գեն–մայոր (1953): ՀՄՊ–ի ժամանակ եղել է Հվ–արմ. ռազմաճակատի շին. վարչության պետ:

ՍԱՐԿԻՍՈՎ Դոնատ Սեմյոնի (1924–2000), ախտաբան–անատոմ: Բժշկ. գիտ. դ–ր, պրոֆ.: Սեմյոն ***Սարկիսովի*** որդին: ՌԲԳԱ ակադ. (1996, նախագահության գլխ. գիտնական քարտուղար): Աշխ–ները վերաբերում են մարդկանց հիվանդությունների ախտածնությանը և ախտաբան. անատոմիային, հարմարվողականության կառուցվածք. հիմքերի ու խանգարված ֆունկցիաների փոխհատուցմանը:

ԽՍՀՄ, ՌԴ Պետ. և Ն. Ի. Պիրոգովի անվ. մրց–ներ:

ՍԱՐԿԻՍՈՎ Հակոբ Աբրահամի (1907–1971), ջրատնտ. շին–յան կազմակերպիչ: Ուզբ. ԽՍՀ վաստ. շինարար, Տաջիկ. ԽՍՀ վաստ. հոիգատոր (1950): 1942–48–ին՝ Ուզբ. ԽՍՀ հողժողկոմի առաջին տեղակալ, 1942–48–ին ղեկավարել է Ֆարհադի ջրէկի, 1957–ից՝ Սովյալ, ապա՝ Քարշի տափաստանների յուրացման և ոռոգման համակարգերի շին–յան աշխ–ները:

ՍԱՐԿԻՍՈՎ Հարություն Քրիստափորի (1908–2001), մանրէաբան: Անասնաբուժ. անկաբանության և անկային թունավորումների մասին ուսմունքի հիմնադիրներից: Կենսբ. գիտ. դ–ր (1951), պրոֆ. (1952): ՀամԳԳԱ ակադ. (1928): Սոց. աշխ. հերոս (1990): Աշխ–ները վերաբերում են մարդկանց սննդաթունային ալեյկիայի և կենդանիների ֆուզարիոտոքսիկոզի պատճառագիտ–յանը: Մշակել է կենդանիների մաշկ. հիվանդությունների ժամանակ իմունագոյացման տես. հիմունքները: Նրա ղեկավարությամբ ստեղծվել են (աշխարհում՝ առաջինը) խեկ–ների, ձիերի, մորթատու գազանների, ճագարների տրիխոֆիտայի դեմ վակցինաներ (ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1973): ԽՍՀՄ–ում 1–ինն է կիրառել հակաբիոտիկներ անասնապահության և անասնաբուժության մեջ:

Էստ. ԽՍՀ Պետ. մրց. (1987), Լենինի (1971), Աշխ. կարմիր դրոշի (1954), Կարմիր աստղի (1943), ՌԴ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 4–րդ աստիճանի (1999) շքանշաններ, ՄԱԿ–ի մտավոր սեփականության հանձաշխ. կազմ–յան ոսկե մեդալ:

ՍԱՐԿԻՍՈՎ (Սարգսյան) Մորիս (1882–1947), քանդ.: Հեղինակ է դիմաքանդակների («Ժան Ժակ Մորիե» ևն) և թեմատիկ գործերի («Մահ», «Հուսալքում», «Փրիգենիա» ևն): Նրա «Հանճարի հովանավորը» բարձրաքանդակը (1921) տեղադրված է Ժնևի Աշխ–ի միջազգ. պալատի ճակատին:

ՍԱՐԿԻՍՈՎ Պավել Զիբրայելի (1932–2012), քիմիկոս–տեխնոլոգ: Քիմ. գիտ.

դ–ր (1978), պրոֆ.: ՌԳԱ ակադ. (1997, թղթ. անդամ՝ 1990–ից): Ռուսաստանի Դ. Ի. Մենդելեևի անվ. քիմիատեխնոլոգ. համալսարանի ռեկտոր (1985–2005, նախագահ՝ 2006–ից), «Քիմիական տեխնոլոգիայի տես. հիմունքները» (ռուս.) ամսագրի գլխ. խմբ.: Դ. Վ. Մենդելեևի անվ. համամիութ. քիմ. ընկ–յան նախագահ: Աշխ–ները վերաբերում են սիլիկատ. և դժվարահալ նյութերի ֆիզքիմիային ու քիմ. տեխնոլոգիային:

ՌԴ նախագահի (2000), Կառ–յան (2002, 2006) մրց–ներ, ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (1986), ՌԴ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 4–րդ աստիճանի (2003), Բարեկամության (1996) շքանշաններ:

ՍԱՐԿԻՄՈՎ, Ռոբերտ Նիկոլայի (1930–2001), կենսաբան–գենետիկ: Կենսբ. գիտ. դ–ր (1994): Աշակել է արհեստ. պայմաններում որդան կարմիրի բուծման տեխնոլոգիա և բնական պոպուլացիայի թվաքանակի վրա բացասաբար չազդող հավաքի արդյունավետ մեթոդներ: Ս–ի առաջարկությամբ ստեղծվել է «Որդան կարմիր» արգելավայրը (1978): Կազմել է միջատի տարածման քարտեզներ:

ՍԱՐԿԻՍՈՎ, Ռոնալդ Գրիգորի (1932–2006), ռազմ. տեխնիկայի ճարտարագետ: ՌԴ վաստ. մեքենաշինարար (2000): ՌԴ Կովրովի (Վլադիմիրի մարզ) մեխ. գործարանի գլխ. տնօրեն (1974–98): Կազմակերպել, մշակել ու ղեկավարել է ռազմ. հրթիռների, ինքնաձիգ հրացանների, գնդացիրների ևն արտադր–յունները:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1975), Լենինի, Աշխ. կարմիր դրոշի, Հոկտ. հեղ–յան շքանշաններ:

ՍԱՐԿԻՍՈՎ, Սեմյոն (Սարգսյան Սիմոն) Ալեքսանդրի (1895–1971), նյարդաֆիզիոլոգ և նյարդաձևաբան: ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1948, ակադ. քարտուղար՝ 1947–51–ին): Դոնատ *Սարկիսովի* հայրը: Աշխ–ները վերաբերում են գլխուղեղի տեսող. ֆունկցիային, ԿՆՀ–ի կառուցվածք. առանձնահատկություններին և կենսաէլ. երևույթներին՝ ուղեղաբնի ցանցանման գոյացության դերի, գլխուղեղի էլեկտրոն. մանրադիտման, ԿՆՀ–ի վերլուծիչների դինամիկ տեղայնացման հարցերին: Ս–ի նախաձեռնությամբ Մոսկվայում կազմակերպվել է (1925) ուղեղի բջջամանրակերտվածքի լաբորատորիա (1928–ից՝ Ուղեղի ԳՀԻ, մինչև 1968–ը Ս. եղել է տնօրենն): Ռումինիայի ԳԱ պատվ. անդամ: Նյարդախտաբանների և հոգեբույժների համամիութ. ընկ–յան նախագահ:

ՍԱՐԿԻՍՈՎ, Ֆեոդոր Իսայու (1915–1944), գվարդիայի լեյտ.: ԽՄ հերոս (1943): Հերոսի կոչման է արժանացել 1943–ի հոկտ–ին Մելիտոպոլի (Ուկրաինա) ազատագրման ժամանակ ցուցաբերած խիզախության համար: Զոհվել է Լիտվայի Ուպին բնակավայրի համար մղված մարտերում:

ՍԱՐԿԻՍՈՎԱ, Մարիա Մեժլումի (1927–2002), բույսերի ֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ–ր (1974): Աշխ–ները վերաբերում են պտղատու ծառերի և խաղողի վազի աճման, զարգացման ու պտղաբերման հորմոն. կարգավորման, պտղագոյացման, կտրոնների արմատակազմման խնդիրներին:

ՍԱՐԿՈՂԱՅԻՆՆԵՐ, նախակենդանիների ենթատիպ: Շարժման և սնունդ որսալու օրգաններն են կեղծ ոտքերը (պսևդոպոդներ): Հայտնի է 3 դաս՝ արմատոտանիներ, ճառագայթավորներ (ռադիոլարիաներ) և արևակենդանիներ: Ճառագայթավորների շարքից են ականտարիաները, որոնց նախկինում առանձնացրել էին որպես առանձին դաս: Հայտնի է ավելի քան 10 հզ. տեսակ՝ առավելապես՝ ծովերում, նաև քաղցրահամ ջրերում և հողում:

ՍԱՐԿՈՒԴՈՋ, հիվանդություն, երբ տարբեր օրգաններ (ավելի հաճախ՝ մաշկը, թոքերը, ավշահանգույցները) ախտահարվում են առանձնահատուկ գրանուլոմաներով և բազմատեսակ դրսևորումներով:

ՍԱՐԿՈԼԵՄԱ (< հուն. sarx, սեռ. հոլ.՝ sarkos – միս և lemma – թաղանթ), բարակ թաղանթ, որը ծածկում է հարթմկան. բջիջները, միջաձիգ զոլավոր և սրտամկանի թելիկները:

ՍԱՐԿՈՄԱ, [լատ.՝ sarcoma, հուն.՝ sarks, սեռ. հոլ.՝ sarkos – միս (կտրվածքի տեսքը նման է հում ձկան մսի, այստեղից՝ անվանումը) և ...*ոմա*], շարակց. հյուսվածքի չարորակ ուռուցք. առաջանում է սաղմն. շարակց. հյուսվածքից (մեզենքիմոմա), ոսկրայինից (օստեոսարկոմա), մկանայինից (միոսարկոմա) ևն: Ըստ ձևաբան. պատկերի՝ տարբերում են կլոր–, իլիկա–, բազմաձևաբջջ. Ս., ֆիբրո–Ս.:

ՍԱՐԿՈՊԼԱԶՄԱ, մկանաթելերի և բջիջների բջջապլազմա. լցնում է մկանաթելերի միջև եղած տարածությունը: Պարունակում է թելիկների ներսում դրդող ազդակների անցկացումն ապահովող կառուցվածքներ:

ՍԱՐԿՈՊՈՐԻԴԻՈՒՄՆԵՐ, **մսի սպորավորներ**, սպորավորների տիպի նախակենդանիների սեռ: Հայտնի է 30 տեսակ. կաթնասունների, թռչունների, երբեմն՝ սողունների մակաբույծներ են: Տեղակայվում են հիմնականում մկան. հյուսվածքում: Առաջացնում են կենդանիների, հազվադեպ՝ մարդու հիվանդություններ:

ՍԱՐԿՈՖԱԳԻԴՆԵՐ, **գորշ մսաճանճեր**, երկթևանիների կարգի միջատների ընտանիք: Երկ.՝ 3–18 *մմ*: Հայտնի է ավելի քան 2500 տեսակ: Որոշ տեսակներ մարդու վարակիչ հիվանդությունների հարուցիչներ են: Թրթուրներն ապրում են մարդու և կենդանիների արտաթորանքում, դիակներում կամ վերքերում, հազվադեպ փափկամարմինների և միջատների մակաբույծներ են:

ՍԱՐԽ (Sarh, մինչև 1973–ը՝ Ֆորտ–Արշամբո), ք. Չադում, Միջին Շարի մարզի վարչ. կենտրոնը՝ Շարի գետի ափին: Բն.՝ 112,7 հզ. (2010): Տրանսպորտ. հանգույց է: Զարգացած է գղտ–յան հումքի վերամշակությունը:

ՍԱՐՄԱՏՆԵՐ (լատ.՝ Sarmatae), մ. թ. ա. III դ.–մ. թ. IV դ–ում Տոբոլ և Դանուբ գետերի միջև ընկած տափաստաններում սփռված իրանալեզու ցեղերի ընդհ. անվանումը: Մ. թ. ա. I դ–ի սկզբին դաշնակցել են Պոնտոսին՝ ընդդեմ Հռոմի: Մ. թ. I–II դդ–ում Ս–ի մեջ հզորացել են *ալանները*: III դ–ում Հս. Մերձսևծով. շրջաններում Ս–ի տիրապետությունը խարխլել են գոթերը, իսկ IV դ–ում նրանց ջախջախել են հոները:

ՍԱՐՄԵՆ (Սարգսյան Արմենակ Սարգսի, 1901–1984), բանաստեղծ: ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1967): Արտեմ Ս. *Սարգսյանի* հայրը: Հեղինակ է «Հայրենի տուն» (1955), «Հայոց սիրտ» (1960), «Բանաստեղծի աղբյուրը» (1961), «Կենաց բաժակ» (1963), «Ծաղկավոր ձմեռ» (1964), «Երազանք» (1969), «Իմ հայրենի աղջիկները» (1971) քնար. և հայրենասիր. թեմաներով բանաստեղծությունների, «Յոթ երջանիկներ» (1950), «Ծաղկաձոր» (1952), «Խոսող ծաղիկներ» (1958) և մանկ. գործերի այլ ժող–ների: Ս. ՀԽՍՀ պետ. հիմնի տեքստի հեղինակն է: Նրա բանաստեղծությունների հիման վրա ստեղծվել են երգեր:

ՍԱՐՄԻԵՆՏՈ (Sarmiento) Դոմինգո (1811–1888), Արգենտինայի նախագահ՝ 1868–1874–ին: Աջակցել է տնտ–յան և մշակույթի զարգացմանը:

ՍԱՐՅԱԿՆԵՐ (Sturnidae), **սարյականման–ներ**, ճնճղուկանմանների կարգի թռչունների ընտանիք: Երկ.՝ 18–43 *սմ*: Հայտնի է 104 (այլ տվյալներով՝ 111) տեսակ՝ Արլ. կիսագնդի արևադարձներում և մերձարևադարձներում, ՀՀ–ում՝ 2 (սովոր. և վարդագույն): Բազմաթիվ տեսակների արուները երգեցիկ են, տնային պայմաններում կարող են նմանակել ուրիշ թռչունների երգը և մարդու խոսքը: Ոչնչացնում են վնասատու միջատներ:

ՍԱՐՅԱՆ (Հարությունյան) Արաքսի Արծրունու (1937–2013), երաժշտագետ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2008): Ղազարոս *Սարյանի* կինը: Երևանի կոնսերվատորիայի պրոֆ. (1986): Հեղինակ է «Հայ քաղաքային ժողովրդական երգարվեստը (XIX–XX դարեր)» (1973), «Մեղեա Աբրահամյան» (2000, համահեղ.՝ Ա. Բարսամյան), «Թաթուլ Ալթունյանը և հայ երգն ու պարը» (2008), «Լևոն Սամիկոնյան: Երաժշտությունը՝ կյանքի ուղեկից» (2009), «Սամսոն Գասպարյան: Երաժշտագետն ու գործիչը» (2010) և այլ աշխ–ների:

ՍԱՐՅԱՆ (Բաղդասարյան) Գեղամ Բաղդասարի (1902–1976), բանաստեղծ: ՀԽՍՀ (1967) և Ուկր. ԽՍՀ (1972) մշակույթի վաստ. գործիչ: 1922–ից՝ Հայաստանում: Հեղինակ է «Պատմվածքներ» (1928), «Միջօրե» (1935), «Բալլադներ» (1944), «Գրիգոր Դերենիկ» (1967), «Քրիզանթեմ» (1968), «Մտերիմ էջեր» (1972), «Կարոտ» (2003) երգերի, բալլադների, պոեմների ժող–ների, «Օտար մարդը» (1929) վիպակի, «Հրաշալի սերունդ» (1950) չափածո վեպի: Ս–ի բալլադներում ու խոհափիլ. ավանդազրույցներում գերիշխել են Արևելքի ժողդ–ների զարթոնքի թեման («Գյուլնարա», «Գյուլխանդա», «Իրանի», բոլորը՝ 1935): ՀԽՍՀ Պետ. մրց. (1970):

ՍԱՐՅԱՆ (Տեր–Գրիգորյան) Թադևոս Խաչատուրի (1903–1974), դերասան, ռեժ., թատեր. գործիչ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1954): 1921–ից՝ Ալեքսանդրապոլի Քաղլուսվարի թատրոնի դերասան, 1928–ից՝ Լենինականի պետ., 1932–37–ին՝ Բաքվի հայկ., 1942–54–ին՝ ԵԵԿՒԹ–ի գլխ. ռեժ., 1932–ին՝ Հայաստանի Առաջին պետթատրոնի ռեժ. և դերասան, 1938–42–ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի ռեժ., 1955–ից՝ դերասան: Որպես կատարկերգակ դերասան՝ ճանաչվել է Մինթոնի (Շիրվանզադեի «Մորգանի խնամին»), Բալաբեկի (Ն. Զարյանի «Աղբյուրի մոտ» և «Փորձադաշտ»), Նազարի (Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար»), Սուրմաչի (Ա. Մովզոնի «Մի խուլ նրբանցքում») և այլ դերակատարումներով, որոնց բնորոշ են անսպառ հումորն ու նուրբ տեխնիկան: Բեմադրել է Ա. Ֆայկոյի «Պորտֆելավոր մարդը» և այլ գործեր: Նկարահանվել է կինոյում («Լեռնային հեղեղ», 1939, «Տերն ու ծառան», 1962, «Մայր Ժակը և ուրիշները», 1964, բոլորը՝ Հայֆիլմ):

ՍԱՐՅԱՆ Ղազարոս (Լազր) Մարտիրոսի (1920–1998), կոմպոզիտոր, մանկավարժ, հաս. գործիչ: ՀՀ (1972), ԽՍՀՄ (1991) ժող. արտիստ: Պրոֆ. (1972): Մարտիրոս ***Սարյանի*** որդին, Արաքսի ***Սարյանի*** ամուսինը: Հեղինակ է «Խաղաղության օրը» վոկալ-սիմֆ. սյուիտի (1953), «Սիմֆոնիկ պատկերներ»-ի (1955), «Հանդիսավոր նախերգանք»-ի (1957), «Հայաստան» սիմֆ. պաննոյի (1966, Մ. Սարյանի 4 բնանկարների հիման վրա), ջութակի և սիմֆ. նվագախմբի կոնցերտի (1973), սիմֆոնիայի (1980), թավջութակի և դաշնամուրի սոնատների (1948, 1989), լար. կվարտետների (1949, 1986), սիմֆ. նվագախմբի Պասսակալիայի (1995), ջութակի և կամեր. նվագախմբի «Անդանտե և Պրեստո»-ի (1997), երգերի, կինոերաժշտության ևն: ՀԽՍՀ Պետ. մրց. (1983):

ՍԱՐՅԱՆ Մարտիրոս Սարգսի (1880–1972), նկարիչ: ՀԽՍՀ (1926), ԽՍՀՄ (1960) ժող. նկարիչ: ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի (1947), ՀԽՍՀ ԳԱ (1956) ակադ.: Սոց. աշխ. հերոս (1965): Ղազարոս ***Սարյանի*** հայրը: Նորագույն շրջանի հայկ. գեղանկարչության ազգ. դպրոցի հիմնադիրը: Ստեղծագործ. 1-ին շրջանում (1904–09) ստեղծել է նոր ու արդիական «սարյանական» արվ. [«Հեքիաթներ ու երազներ», նկարաշար («Հեքիաթ: Արարատի ստորոտին», «Ծաղկած սարեր» ևն)], 2-րդ շրջանում (1910-ական թթ.) թեմատիկայով և կերպավորման որոշակիության, ոճաձևաբան. և գունագր. առումով զարգացրել է նախորդի սկզբունքները («Կ. Պոլիս: Փողոց: Կեսօր», «Բանականներ», «Փյունիկյան արմավենի» ևն): Մեծ եղեռնի օրերին աշխատել է Հայերին օգնող մոսկովյան կոմիտեում, Էջմիածնում օգնել է (Հ. Թումանյանի, Գ. Լևոնյանի և ուր. հետ) հայ գաղթականներին: 3-րդ շրջանում (1921-ից, ՀԽՍՀ-ում) ստեղծել է հայրենասիր. թեմայով պանոներ, դիմանկարներ, բնանկարներ, նատյուրմորտներ («Հայաստան», 1923, «Ծաղիկներ», 1945, «Բակի անկյուն», 1953, «Իմ հայրենիքը», նկարաշար, 1952–1958, ևն): Հեղինակ է (Հակոբ Կոջոյանի հետ) ՀԽՍՀ զինանշանի, Երևանի Առաջին պետթատրոնի վարագույրի (1923): Զևավորել է (Վարդգես Սուրենյանցի հետ, 1916) Վ. Յ. Բրյուսովի կազմած «Հայ պոեզիան...» անթոլոգիան, Ա. Իսահակյանի, Հ. Թումանյանի, Ե. Չարենցի երկերից, նաև Ա. Սպենդիարյանի «Այմաստ» (1930՝ Օդեսա, 1933՝ Երևան, 1939՝ Մոսկվա), Հ. Ստեփանյանի «Քաջ Նազար» (1935), Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ» (համահեղ., 1956) օպեր. (բոլորը՝ ԵՕԲԹ) և Է. դե Ֆիլիպոյի «Ֆիլումենա Մարտուրանո» (1956, Մոսկվայի Վախթանգովի անվ. թատրոն) թատեր. և այլ ներկայացումներ:

Համաշխ. ցուցահանդեսի Մեծ (1937, Փարիզ), Լենինյան (1961), ԽՍՀՄ (1941), ՀԽՍՀ (1965) պետ. մրց-ներ, Բրյուսելի ցուցահանդեսի ոսկե մեդալ (1958):

ՍԱՐՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ, գեղանկարչ. կրթ. կենտրոն Հալեպում: Հիմնադրվել է 1955-ին՝ Զարեհ Գաբլանի և Ռոբերտ Ճեպեճյանի նախաձեռնությամբ (ղեկ.՝ Ռ. Ճեպեճյան, գեղ. ղեկ-ներ՝ Զ. Գաբլան, Ա. Զորյան, Ու. Դ. Եազճի, 1993-ից՝ Հրազդան Թոքմաջյան): Ս. ա. կազմակերպում է հայ արվ-ին նվիրված դասախոսություններ, իր սաների ցուցահանդեսներ, հրատարակում գրքեր, ալբոմներ:

ՍԱՐՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ, կառուցվել է Երևանում՝ Մարտիրոս ***Սարյանի*** տուն-արվեստանոցին կից (ճարտ.՝ Մարկ ***Գրիգորյան***), բացվել է 1967-ին: Եռահարկ շենքում ներկայացված են նկարչի 1898–1970-ի գեղանկարչ., գրաֆիկ. գործերը: 1972-ից ցուցադրության մաս է կազմում նաև նկարչի արվեստանոցը: Տուն-թանգարանը ցուցահանդեսներ է կազմակերպել Իտալիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Ռուսաստանում և այլուր, մասնակցել միջազգ. ցուցահանդեսների: Հրատարակել է կատալոգներ, ալբոմներ, բուկլետներ:

ՍԱՐՈՅԱՆ Արշալույս Նազարեթի (1923–1974), բանաստեղծ, լրագրող: ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1968): 1947–69-ին՝ ՀԽՍՀ հեռուստառադիոպետկոմի խմբ., ապա՝ գլխ. խմբ.: Հեղինակ է «Ռազմի խոհեր» (1947), «Ճանապարհներ» (1948), «Խաղաղության երթը» (1952), «Սարն ի վեր» (1957), «Քեզ հետ, իմ սիրտ» (1970), «Ճամփեզրի ծառը» (1974), «Համազարկեր հազարաձայն» (1975) և այլ բանաստեղծությունների ժող-ների: Կատարել է թարգմ-յուններ ռուս-ից:

ՍԱՐՈՅԱՆ Լյուսի Վիլյամի (1946–2003), դերասանուհի: Վիլյամ ***Սարոյանի*** դուստրը: Հանդես է եկել Լոնդոնի «Վեսթ Էնդ» (Վ. Սարոյանի «Հե՛յ, ո՞վ կա այդտեղ», «Մի անգամ խաչմերուկում», 1965), Նյու Յորքի «Էդիսոն», Վաշինգտոնի «Ֆորդ» և այլ թատրոններում: 1971-ից նկարահանվել է Հոլիվուդում («Խենթության մի տեսակ», «Մեյդսթոուն», «Կայծակնային արագությամբ», «Կապույտ օձիք» ևն):

ՍԱՐՈՅԱՆ Սեդրակ (Սեյրան) Ֆիրդուսի (ծ. 1967), ՀՀ բանակի գեն-մայոր (2000): 1989–92-ին՝ կամավոր. ջոկատի, 1992–2007-ին՝ ՀՀ ԶՈՒ մի շարք զորամասերի հրամ.: 2007-ին զորացրվել է: 1989–94-ին մասնակցել է ՀՀ և ԼՂՀ ինքնապաշտպ. և ազատագր. մարտերին: ՀՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի (1996), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի (2006), Արիության (1994) ևն մեդալներ:

ՍԱՐՈՅԱՆ Վերոնիկա Յուրիի (ծ. 1978), դերասանուհի: ՀՀ վաստ. արտիստ (2010): 1996-ից՝ Երևանի Կ. Ստանիսլավսկու անվ. ռուս. թատրոնի դերասանուհի (Գոլդա՝ Գ. Գորինի «Հիշատակի աղոթք», Սաշենկա, Սամանա՝ Ա. Ն. Օստրովսկու «Իմաստունն էլ է երբեմն միամիտ լինում», Իշխանուհի Սոֆյա՝ Լ. Շանթի «Ինկած բերդի իշխանուհին», Սոնա, Խանումա, Կարատո՝ Ա. Յագարելիի «Խանումա», Նատաշա՝ Շիրվանզադեի «Մորգանի խնամին», Օլգա՝ Ա. Պ. Չեխովի «Երեք քույր», ևն):

ՍԱՐՈՅԱՆ (Saroyan) Վիլյամ Արմենակի (1908–1981), գրող: Լյուսի ***Սարոյանի*** հայրը: Գրել է անգլ.: Հեղինակ է «Փոքրիկ երեխաներ» (1937), «Ողջույն քեզ սեր» (1938), «Անունս Արամ է» (1940), «Սիրելիս» (1944), «Ասորին» (1949) և այլ պատմվածքների ժող-ների, որտեղ կարևորել է ազգ. հիշողության նշանակությունն անհատի ձևավորման վրա, «Իմ սիրտը լեռներում է» (բեմ.՝ 1939), «Կյանքիդ ժամանակը» (բեմ.՝ 1939), «Քարանձավի մարդիկ» (բեմ.՝ 1957), «Հե՛յ, ո՞վ կա այդտեղ» (բեմ.՝ 1942), «Կոտորածն մանկանց» (1952) և այլ պիեսների, «Մարդկային կատակերգություն» (1942, հայ.՝ 1959), «Հայրի՛կ, դու խենթ ես» (1956), «Մայրի՛կ, ես սիրում եմ քեզ» (1957), «Տղաներ և աղջիկներ» (1963) և այլ վիպակների, «Վեսլի Զեքսոնի արկածները» (1946, հայ.՝ 1965) վեպի: Ս-ի գր. մի շարք կերպարներ հայկ. միջավայրից են՝ ազգ. ավանդություններով ու բարքերով, «կորուսյալ հայրենիքի» ցավով: Ս. կերտել է նաև հոգու մաքրության խորհրդանշան համարվող մանուկների և պատանիների կերպարներ: Ս-ի գործերի մեծ մասը թարգմանվել է և տպագրվել հայ., պիեսները բեմադրվել են հայ բեմում, նկարահանվել են կինոնկարներ: Պուլիցերյան մրց. (1981):

ՍԱՐՈՍ (հուն.՝ saros), ժամանակահատված, որի ավարտից հետո Արեգակի և Լուսնի խավարումները կրկնվում են նույն հաջորդականությամբ: Պայմանավորված է Արեգակի, Լուսնի և լուսն. ուղեծրի հանգույցների երկնոլորտում փոխդասավորության պարբեր. կրկնությամբ, մոտավորապես հավասար է 6585 1/3 օրվա (18,03 արևադարձ. տարվա):

ՍԱՐՋԵՆԹ (Sargent) Թոմաս (ծ. 1943), ամերիկացի տնտեսագետ: Տնտ. դինամիկայի (1989–92), Էկոնոմետրական (2005) ընկ-ների և Ամերիկ. տնտեսագիտ. ընկերակցության (2007–12) նախագահ: Աշխ-ները վերաբերում են մակրոէկոնոմիկայում պատճառահետևանքային կապերի էմպիրիկ ուսումնասիրությանը: Նորելյան մրց. (2011, Ք. ***Սիմսի*** հետ):

ՍԱՐՍԱՆԳԻ ՋՐԱՄԲԱՐ, ԼՂՀ Մարտակերտի շրջանում՝ Թարթառի միջին հոսանքում՝ Մարտակերտ ք-ից մոտ 15 *կմ* հվ-արմ.: Շահագործման է հանձնվել 1976-ին: Ջրատարողությունը՝ 560 մլն *մ*^{3}, օգտ.՝ 500 մլն *մ*^{3}: Բարձր.՝ 130 *մ*: Ջրերն օգտագործվում են ոռոգման և էներգետիկ նպատակներով: Ձմռանը սառցակալում է: Կա ձկնաբուծություն: Ջրերով աշխատում է ***Սարսանգի ջրէկը***:

ՍԱՐՍԱՆԳԻ ՋՐԷԿ, ԼՂՀ Մարտակերտի շրջանում՝ Թարթառ գետի վրա: Կառուցվել է 1976-ին: Արցախի ամենահզոր (ապահովում է երկրում սպառվող էլեկտրաէներգիայի 40–60 %-ը) էլեկտրակայանն է՝ 50 *ՄՎտ* դրվածք. հզորությամբ:

ՍԱՐՎԱՆԴԻՔԱՐ, **Սարվանդի քար, Սարավան**, բերդ Կիլիկ. Հայաստանում՝ Սև կամ Ամանոսի լ-անցքերից մեկում՝ դժվարամատույց ժայռի գագաթին: XII դ-ում եղել է Ռուբինյանների իշխանապետության կարևոր ռազմակայան և բաժտուն (մաքսատուն) երկրի հվ-արլ. սահմանում: XIII դ-ի վերջին և XIV դ-ի սկզբին Ս-ում իշխել են Կոստանդին Հեթումյանի եղբայրներ Օշինն ու Սմբատը: 1337/1338-ին Ս. զավթել է Եգիպտոսի սուլթանությունը, իսկ XVI դ-ում՝ օսմ. թուրքերը: Փլատակների մեջ պահպանվել են հայ. արձանագրություններով բերդաքարեր:

ՍԱՐՎԱՐԴ, **Սալվարդ, Աղոթարան**, լ-գագաթ Զանգեզուրի լ-շղթայի հս. մասում՝ Սյունիքի մարզի ու Նախիջևանի ԻՀ սահմանին: Բարձր.՝ 3161 *մ*: Բուսածածկույթը լ-մարգագետնային է: Կան բազմաթիվ սառնորակ աղբյուրներ:

«ՍԱՐՏԱՐԱՊԱՏ», շաբաթաթերթ (1975-ից, Բուենոս Այրես՝ հայ., իսպ. և պորտուգ.): Հվ. Ամերիկայում ՌԱԿ-ի և ԹՄՄ-ի պաշտոնաթերթը: Խմբ-ներ՝ Գևորգ Մարաշլյան, Վարուժան Աճեմյան, Հովիկ Էորդեքյան, Նորայր Գարատանյան, Դիանա Տեր-Կարապետյան, Սերխիո Նահապետյան, Դիանա Տեր-Կարապետյան:

ՍԱՐՏՐ (Sartre) Ժան Պոլ (1905–1980), ֆրանսիացի գրող, փիլ., հրապարակախոս: Ֆրանս. էկզիստենցիալիզմի առաջնորդը: Դիմադրության շարժման մասնակից: Ս–ի հիմն. փիլ. երկը «Կեցությունը և ոչինչը» (1943) աշխ–ն է: Ելակետ ընդունելով «գոյությունը նախորդում է էությանը» էկզիստենցիալիստ. հիմնադրույթը՝ Ս. կառուցել է իր «ֆենոմենոլոգիական գոյաբանությունը», որի հիմքում սուբյեկտիվիզմի և օբյեկտիվիզմի ազատության և անհրաժեշտության հակասականությունն է: Հեղինակ է նաև «Ինչ է գրականությունը» (1947), «Բոդլեր» (1947), «Դիալեկտիկական բանականության քննադատությունը» (1960), «Ընտանիքի խենթուկը» (հ. 1–3, 1971–72) և այլ աշխ–ների, «Սրտխառնուցք» (1938, հայ.՝ 2016) վեպի, «Պատը» (1939) պատմվածքների ժող–ի, «Ազատության ճանապարհներ» (1945–49) քառերգության, «Ճանճեր» (1943, հայ.՝ 1986), «Փակ դռան հետևում» (1945, հայ.՝ «Դռնփակ», 1963), «Սատանան և Տեր Աստվածը» (1951, հայ.՝ 1983), «Ալտոնայի մենակյացները» (1960, հայ.՝ «Ալտոնայի կալանակյացները», 1986) և այլ պիեսների: Նոբելյան մրց. (1964), որից հրաժարվել է:

ՍԱՐՈՒԽԱՆ Ալեքսանդր Հակոբի (1898–1977), նկարիչ, հրապարակախոս, հաս. գործիչ: Երգիծանկարչության հիմնադիրը Եգիպտոսում:1924–ից՝ Կահիրեում. հրատարակել է «Հայկական սինեմա» (1925–26), «Կարավան» (ֆրանս., 1938–42) ամսագրերը: Հեղինակ է «Այս պատերազմը» (1945), «Մենք մեր ակնոցով» (1962) և այլ երգիծանկարների ժող–ների, գրքի պատկերազարդումների (Ե. Օտյանի «Ընկեր Փանջունի», 1938): «Մենք հայերեն չենք գիտեր» կատակերգության (1963, բեմ.՝ հայկ. հեռուստաթատրոն, Երևան):

ՍԱՐՈՒԽԱՆ (Սարուխանյան) Առաքել Զատիկի (1863–1949), պատմաբան, բանասեր, գրող, հաս. գործիչ: Ուսումնասիրել է հայկ. գաղթավայրերի պատմությունն ու մշակույթը («Սեւ ծովու ռուսական եզերքը», «Կովկասեան լերանց մէջ», «Հոլլանդան եւ հայերը ԺԶ–ԺԹ դարերում», «Բելգիա եւ հայերը»): Հեղինակ է նաև «Վրաստան եւ հայերը» (1939), «Հայկական խնդիրն եւ Ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում» (1912), «Աղեքսանդր Սանթաշեանց, մեծ վաճառականն եւ բարեգործը» (1931) աշխ–ների, նաև գեղ. գործերի:

ՍԱՐՈՒԽԱՆ Հրաչյա (Սարուխանյան Հրաչիկ Լյուդվիգի, 1947–2016), բանաստեղծ: 2001–ից՝ ՀԳՄ Վանաձորի բաժանմունքի քարտուղար: Հեղինակ է «Եզրագծեր» (1977), «Հրաշք օրեր» (1981), «Վկայություններ» (1989), «Այլ ժամանակներ» (1997), «Աստծո առավոտ» (1999), «Ի տրիտուր» (2005), «Սիրո հուշապսակ» (2005) բանաստեղծությունների ժող–ների:

ՀԳՄ Ա. Իսահակյանի անվ. (1990) և ՀԳՄ ամենամյա (1997) մրց–ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (1998):

ՍԱՐՈՒԽԱՆ ԽՈՍԵ Քերմեզ (ծ. 1940), բնապահպանության և բնօգտագործման բնագավառի գիտնական: Էկոլոգ. գիտ. դ–ր (1972), պրոֆ. (1965): Մեխիկոյի համալսարանի կենսաբ. ինստ–ի տնօրեն (1979–87), Մեխիկոյի ԳԱ նախագահ (1984–85), համալսարանի ռեկտոր (1989–1997): Ս. Խ–ի առաջարկով Մեքսիկայում, ապա ԱՄՆ–ում ստեղծվել են Երկրի առաջին կենսաբազմազանության պահպանության հաստատությունները: Աշխ–ները վերաբերում են արևադարձ. բույսերի էկոլոգիայի հարցերին: Մեխիկոյի կենսաբ. ընկ–յան (1972–75), Լատինաամերիկ. համալսարանների միության (1992–95) նախագահ: ԱՄՆ ԳԱԱ արտ. (1994), Անգլիայի թագավոր. ընկ–յան (2003) անդամ: ԱՄՆ «Թայլեր» հատուկ մրց. (2017, համապատասխան հիմնադրամի և Հվ. Կալիֆոռնիայի համալսարանի):

ՍԱՐՈՒԽԱՆԻ ՁՐԱՆՑՔ, ՀՀ Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Սարուխանի աղբյուրներից, հասնում մինչև Գավառ ք.: Շահագործման է հանձնվել 1936–ին: Երկ.՝ 3,7 *կմ*, ջրթողունակությունը՝ 100 *մ³/վ*: Ոռոգում է Սարուխան, Կարմիրգյուղ, Գանձակ գ–երի հողատարածքները:

ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Էդուարդ Իոսիֆի (ծ. 1940), օվկիանոսագետ–բևեռախույզ: Աշխարհագր. գիտ. դ–ր (1982): Մասնակցել է «Հյուսիս Բ–19» դրեյֆող կայանի աշխ–ին, արկտիկ. և անտարկտիկ. մի շարք արշավախմբերի, Ուեդդելի ծովում ղեկավարել է «Պոլինյա» միջազգ. արշավախումբը: 1983–ից՝ Համաշխ. օդերևութաբան. կազմ–յան գլխ. քարտուղարի խորհրդական, 2007–08–ին՝ եղանակի համաշխ. ծառայության տնօրեն: Աշխ–ները վերաբերում են օվկիանոս. հոսանքների և ջր. զանգվածների շրջանառության խնդիրներին:

ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Հովհաննես Հովհաննեսի (ծ. 1964), մանկ. վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1998): Հովհաննես ***Սարուխանյանի*** որդին: Աշխ–ները վերաբերում են կրաշ–համախտանիշով հիվանդների թարախ. վերքերի բուժման մեջ լազեր. ճառագայթման և բազմաֆերմենտ. վիրակապ. նյութերի կիրառմանը, երեխաների հաստ աղիի շարժող. ֆունկցիոնալ խանգարումների բուժմանը: Զբաղվել է 1988–ի երկրաշարժից տուժած երեխաների բուժմամբ:

ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Հովհաննես Վազգենի (ծ. 1938), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1963), պրոֆ. (1979): ՀՀ ԲԳԱ (1998), վիրաբուժ. ԳԱ (1999) ակադ.: ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2007): Վազգեն ***Սարուխանյանի*** որդին, Հովհաննես ***Սարուխանյանի*** հայրը: ՀՀ–ում առաջինն է կատարել թոքի գլխ. բրոնխի սեպաձև մասնահատում, լյարդի ձախ բլթի հեռացում, ենթաստամոքս. գեղձի մասնահատում, լեղաքարերի ջարդում (լիթոտրիպսիա): Մշակել է ստամոքսաղիք. բերանակցման եղանակներ աղիի լայնական կտրվածքով, կիրառել 2 թոքի միաժամանակյա երկկողմանի փոխպատվաստում: ՀՀ ԱՆ գլխ. վիրաբույժ (1987–ից), ՀՀ վիրաբույժների գիտ. ընկ–յան նախագահ (1988–ից), Հայկ. մասնագետ–վիրաբույժների միության նախագահ (2000–ից):

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան (1989), ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1–ին աստիճանի (2013), «Մխիթար Հերացի» (2000) մեդալներ:

ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ (Լևոնյան) Սարտիրոս, **Սարտիկ** (1873–1896), ազգ–ազատագր. շարժման գործիչ: Հնչակյան կուս–յան անդամ: Մկրտիչ ***Ավետիսյանի*** և ***Պետրոյի*** հետ կազմակերպել է 1896–ի ***Վանի ինքնապաշտպանությունը***: Զոհվել է Վանից նահանջելիս՝ քրդերի հետ զինված բախման ժամանակ: Շ. Կուրղինյանը Ս–ին է ձոնել իր «Հառաջ անվեհեր» բանաստեղծությունը:

ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Նորայր Բագրատի (ծ. 1935), պատմաբան, լրագրող–հրապարակախոս: Պատմ. գիտ. դ–ր (1998): Հեղինակ է «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ» (1971), «Մտ. Շահումյանի պատմագիտական հայացքները» (1979), «Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական–քաղաքական մտքի և պատմագրության մեջ» (1997) աշխ–ների:

ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Վազգեն Հովհաննեսի (1910–1973), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1956), պրոֆ. (1958): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1964): Հովհաննես Վ. ***Սարուխանյանի*** հայրը: Աշխ–ները վերաբերում են մասնահատման ժամանակ բարակ և հաստ աղիների պլաստիկայի, միջողնային սկավառակների ախտաբանության, թոքերի քաղցկեղի, էխինոկոկոզի վիրաբուժ. բարդությունների, սնուցող. խոցերի, երիկամ. խիթի ախտածնության և բուժման հարցերին:

ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Փառանձեմ Գևորգի (1906–1988), մանրէաբան: Կենսաբ. գիտ. դ–ր (1956), պրոֆ. (1958): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1967): Լևոն ***Տրզինկյանի*** կինը: Աշխ–ները վերաբերում են միկրոօրգանիզմների կենսաբ. առանձնահատկություններին: Ս–ի հետազոտությունների շնորհիվ ստացվել և արտադր–յան (կաթի, պանրի, հացի ևն) մեջ ներդրվել են մի շարք խմորիչներ:

ՍԱՐՔԱՔԵՐՈՒՄ, **կարգաբերում**, 1. մեքենայի սարքի, սարքավորման հարաչափերի կարգավորումը շահագործման ընթացքում աշխ. ռեժիմի փոփոխության դեպքում: 2. Երաժշտ. գործիքի հնչողության կարգավորում, լարում: 3. Ռադիոընդունիչի անհրաժեշտ երկ–յան ռադիոլիքի հաստատում:

ՍԱՐՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, մեքենաշինության ճյուղ. արտադրում է չափման, վերլուծության, մշակման, տեղեկույթի ներկայացման, կարգաբերման, ավտոմատ և ավտոմատացված կառավարման միջոցներ և համակարգեր, ինչպես նաև գիտ–յան և տեխնիկայի այն ոլորտը, որն զբաղվում է կառավարման համակարգերի ու նրանց ավտոմատացման միջոցների մշակմամբ:

ՍԱՅ Նատալյա Իլյինիչնա (1903–1993), ռուս. ռեժ., թատեր. գործիչ: ԽՍՀՄ ժող. արտիստ (1975): Սոց. աշխ. հերոս (1983): 1921–36–ին՝ Մոսկվայի մանկ. թատրոնի (այժմ՝ Կենտր. մանկ. թատրոն) տնօրեն և գեղ. ղեկ.: Մանկ. երաժշտ. թատրոնի (1965) հիմնադիր–գեղ. ղեկ.: Հեղինակ է պիեսների, մանկ.օպերաների և բալետների լիբրետոների: Անհիմն ձերբակալվել է (1937–42): ԽՍՀՄ Պետ. (1972), Լենինյան (1982) մրց–ներ:

ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ, Սաուդյան Արաբիայի Թագավորություն (Ալ–Մամլյաքա ալ–Արաբիա աս–Սաուդիա), պետություն Հվ–արմ. Ասիայում: Զբաղեցնում է Արաբ. թ–կղզու մոտ 2/3–ը: Սահմանակից է Հորդանանին, Իրաքին, Քուվեյթին, Քաթարին, ԱՄԷ–ին, Օմանին և Եմենին: Տարածքը՝ 2,2 մլն *կմ²*, բն.՝ 28,7 մլն (2009): Մայրաքաղաքը՝ ***Էր Ռիյադ***: Պետ. լեզուն՝ արաբ.: Կառավարման ձևը՝ միապետ.: Պետության գլուխը թագավորն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ

խորհրդարանը: Հավատացյալների մեծ մասը սուննի մահմեդական է: Բաժանված է 12 վարչ. օկրուգների: Անդամակցում է ՄՄԿ-ին, ՆԱԵԿ-ին, ԱՊԼ-ին ևն: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 54 հզ. ԱՄՆ դոլար է (2015): Արտահանում է հիմնականում նավթ և նավթամթերք (արտահանման 90 %-ը), ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ սաուդյան ռիալ:

Ս. Ա.-ի տարածքում մ. թ. ա. II հզ.-ամյակում հիմն. բնակիչներ են դարձել արաբ. քոչվոր ցեղերը: VII դ.-ում (Հիջազում) է ծագել մահմեդականությունը, և 630-ին ստեղծվել առաջին մահմեդ. կրոնապետությունը՝ Արաբ. խալիֆությունը՝ Մեդինա մայրաքաղաքով: Ս. Ա.-ում է Մեքքան, որը դարձել է մահմեդ. աշխարհի կարևորագույն սրբավայրը: VII–VIII դդ.-ում ժամանակակից Ս. Ա.-ի տարածքի մեծ մասը մտել է մայրաների խալիֆության, VIII–IX դդ.-ում՝ Աբբասյանների խալիֆության կազմի մեջ: X–XII դդ.-ում Ս. Ա.-ի տարածքում առաջացել են առանձին ամիրություններ, սուլթանություններ, իսկ Հիջազը վասալ. կախման մեջ է ընկել Ֆաթիմյաններից, ապա՝ Էյուբյաններից, XIII դ.-ի կեսի–XVI դ.-ի սկիզբը՝ մամլուքներից: XVI դ.-ի սկզբին Հիջազն ընկել է Օսմ. կայսրության տիրապետության տակ: Նեջդում, որը անկախ ամիրություն էր, XVIII դ.-ում առաջացել է մահմեդ. կրոնաքաղ. ուղղություն՝ ***վահաբականությունը***: Նեջդի ամիրներից Մուհամմեդ իբն Սաուդը (այժմ՝ Ս. Ա.-ում կառավարող Սաուդյանների դինաստիայի հիմնադիրը) 1745-ին պայքար է սկսել Արաբիայի միավորման և միասն. պետություն ստեղծելու համար: XIX դ.-ի սկզբին ստեղծվել է Սաուդյան միասն. պետությունը, որի կազմի մեջ են մտել Արաբ. թ-կղզու մեծ մասը, Պարսից ծոցի ամիրությունները, Հադրամաուտը, Բահրեյնը, Բասրան: 1811–18-ին Եգիպտոսի կառավարիչ Մուհամմեդ Ալիի զորքերը զավթել են Արաբ. թ-կղզու մեծ մասը, և Ս. Ա. տրոհվել է: Մինչև 1865-ը (ընդհատումներով) Ս. Ա. եգիպտ. տիրապետության տակ էր, Հիջազը 1840-ից հետո՝ թուրք. իշխանության տակ: XIX դ.-ի 2-րդ կեսին վահաբ. պետությունը զավթել են Շամմարի (Հս. Արաբիա) իշխանության կառավարիչ Ռաշիդյանները: Իշխանության համար սկսվել է պայքար Սաուդյան և Ռաշիդյան ընտանիքների միջև: Սաուդյան էմիր Իբն Սաուդը, Քուվեյթի էմիր Մուբարակ աս-Սաբահի օգնությամբ, 1902-ին պարտության է մատնել Ռաշիդյաններին և գրավել մայրաքաղաք Էր Ռիյադը: 1927-ին ստեղծվել է Հիջազ, Նեջդ և միացված մարզեր պետությունը, 1932-ից՝ Ս. Ա.: Տիրապետելով նավթ. և ֆին. հսկայական միջոցների՝ Ս. Ա. կարևոր դեր է խաղում արաբ. և միջազգ. քաղ-յան մեջ: Իրան-իրաքյան պատերազմի ժամանակ (1980–88) Ս. Ա. աջակցել է Իրաքին, Քուվեյթի ճգնաժամի ժամանակ (1990–91) եղել հակաիրաքյան դաշինքում: 2003-ի Իրաքյան 2-րդ պատերազմի ժամանակ սկզբում չեզոքություն է պահպանել, ապա՝ միացել ԱՄՆ-ի գլխավորած դաշինքին: 2005-ին Ֆահդ Աբդուլ Ազիզ ալ-Սաուդի մահից հետո գահակալել է կրտսեր եղբայր Աբդուլլահ Բին Աբդուլ Ազիզ ալ Սաուդը, որը մեծ դեր է ունեցել երկրի զարգացման մեջ: 2015-ին՝ թագավորի մահվանից հետո, գահը ժառանգել է Սալման Բին Աբդուլ Ազիզ ալ-Սաուդը:

ՍԱՈՒԴՆԵՐ (Սաուդյան Արաբիայի արաբներ), ժողդ, Սաուդյան Արաբիայի հիմն. բնակչությունը (20 մլն, 2010): Ապրում են նաև Սիրիայում, Իրաքում, Քուվեյթում ևն: Լեզուն՝ արաբ.: Առանձնանում են կենտր.՝ նեջդիների, և արմ.՝ հիջազների խմբերը: Հավատացյալները սուննի և շիա մահմեդական են:

ՍԱՈՒԹ ԲԵՆԴ (South Bend), ք. ԱՄՆ Ինդիանա նահ-ում, Սենտ Ջոզեֆ մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 101 հզ. (արվարձաններով՝ 107 հզ., 2010): Ունի համալսարան:

ՍԱՈՒԹԵՆԴ ԾՈՎԻ (Southend-on-Sea), ք. Անգլիայում՝ Թեմզայի Էստուարում: Բն.՝ 156,4 հզ. (2010): Ծովակլիմ. առողջարան է:

ՍԱՈՒԹՀԵՄՊՏՈՆ (Southampton), կոզի Կանադայի ափերի մոտ՝ Հուդզոնի ծոցում: Տարածքը՝ 44 հզ. *կմ*²: Բն.՝ շուրջ 800: Բարձր.՝ 625 *մ*: Բնակավայրը Կորալ Հարբորն է:

ՍԱՈՒԹՀԵՄՊՏՈՆ, ք. Անգլիայում՝ Լա Մանշի ափին: Բն.՝ 237 հզ. (2010): Խոշոր նավինգստ-ի բեռնաշրջանառությունը՝ 40 մլն-ից ավելի *տ*: Կան ավտո- և նավաշին. ձեռն-ներ: Ս-ի մոտակայքում գործում է խոշոր նավթավերամշակման և նավթ. համալիր: Ունի համալսարան: Հայտնի է X դ.-ից: Շարտ. հուշարձանները XII–XIV դդ.-ի են:

ՍԱՈՒԿՈՎ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (1902–1964), երկրաքիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1953): Աշխ-ները վերաբերում են հազվագյուտ և ցրված տարրերի (հատկապես՝ սնդիկի) երկրաքիմիային, օգտ. հանածոների հանքավայրերի երկրաքիմ. որոնումներին և երկրաքիմիայի տես. խնդիրներին:

ԽՍՀՄ Պետ. (1947, 1952), ԽՍՀՄ ԳԱ Ա. Ե. Ֆերսմանի անվ. (1964) մրց-ներ:

ՍԱՈՒՆԱ (sauna), **ֆիննական բաղնիք**՝ շոգեբաղնիքի տաք չոր օդով (ջերմաստիճանը՝ 90–140°C, խոնավությունը՝ 5–15 %) և լողավազանի կամ բնական ջրամբարի սառը ջրով՝ ջերմաստիճան. հաջորդափոխությամբ:

«ՍԱԻԱՆՆԱԿ», ազգ., քաղ. երգիծաթերթ (1919–71, Կահիրե, նաև «Ձերելին», «Սաւառնակ–Ձերելին» անվանումներով): Հիմնադիր և ցկյանս խմբ.՝ Երվանդ Մսրլյան:

ՍԱՖԱՐՈՎԱ–ԱԲԱՇԻՋԵ Մակո (Մարիամ) Միքայելի (1860–1940), դերասանուհի: ՎԽՍՀ ժող. արտիստ (1925): 1878-ից խաղացել է Թիֆլիսի վրաց. դրամատիկ. խմբում, աչքի ընկել կատակերգ. և դրամատիկ դերերով (Նատալյա՝ Գ. Սունդուկյանի «Խաթաբալա», Պոլինա՝ Ա. Ն. Օստրովսկու «Եկամտաբեր պաշտոն», Օֆելյա՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», ևն):

ՍԱՖՈՐ, **վազ**, **վազա** (ֆրանս.՝ vase, լատ. vas – անոթ, աման), 1. կավե կամ մետաղե աման հեղուկների համար: 2. Անոթ, որի մեջ պահում են հանգուցյալի դիակի մոխիրը՝ **աճյունակալ, աճյունասափոր**: 3. Հեղուկ և սորուն նյութերի չափ՝ Ս. կամ **փաս** (տես *Չափագիտություն*): 4. Դեկորատիվ անոթների ընդհ. անվանումը, Ս. են կոչվում նաև հինհուն. կավե անոթները:

ՍԱՖՈՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ, անտիկ խեցե անոթների նկարազարդում: Զարգացել է *Կրետե–Միկենյան մշակույթում*, կատարելության հասել հինհուն. արվ-ում: Սափորը պատել են սև լաքով, սպիտակ, ծիրանագույն, հազվադեպ՝ ոչ դիմացկուն «ջրաներկային» գունավոր ներկերով և նկարազարդել (բուս., կենդ., երկրչփ., մարդկանց պատկերներ, կենցաղ. և դից. տեսարաններ ևն): Ժամանակակից Ս-յան մասին տես ***Խեցեգործություն*** հոդվածում:

ՍԱՖՐԻՉ (Սափրիչյան) Ալիս Ֆրանցյուլի (1916–1990), դերասանուհի: Խաղացել է Փարիզի և Ֆրանսիայի գավառ. թատրոններում, գլխ. դերերով հանդես եկել հեռուստատես. («Կապը», «Կյանքը, որ քեզ տվեցի» ևն) և թատեր. («Զինակոչիկը», «Ճեդրա») ներկայացումներում, նկարահանվել կինոյում («Խենթության իրավունքը» ևն): Հեղինակ է ինքնակենսագր. երկերի: Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» շքանշան:

«ՍԱՖՐԻՉ», գր-երգիծ. ամսագիր (1906–08, Ս. Պետերբուրգ): Խմբ-հրտ.՝ Դավիթ Օքրոյան:

ՍԱՖՐԻՉՅԱՆ Տիմոթեոս (1821–1909), բանասեր, ճանապարհորդ, Երուսաղեմի միաբանության անդամ: 1867–69-ին ճանապարհորդել է Եթովպիայում, 1871-ին հրատարակել «Երկամեայ պանդխտութիւն ի Հապէշստան…» ճամփորդ. նոթերը, որոնք ճանաչող. մեծ արժեք ունեն:

ՍԱՔԱՅԱՆ Դորա Գևորգի (ծ. 1931), գեր-մանագետ, հայագետ, թարգմանչուհի: Բանասիր. գիտ. թեկնածու (1965): Մակ-Գիլ (Մոնրեալ) համալսարանի պրոֆ. (1975): ԵՊՀ պատվ. դ-ր (2012): 1975-ից՝ Կանադայում: Հեղինակ է «Տեքստի կապակցվածության ձևերը: Անվանականացումը որպես ասույթային հարակրկնություն արևելահայերենում» (գերմ., 1986), հայ-անգլերեն (անգլ., 1994), հայ-գերմաներեն (գերմ., 2001), հայ-ֆրանսերեն (ֆրանս., 2014) առածանիների, անգլիախոս աշխարհի համար արևմտահայերենի (անգլ., 2000) և արևելահայերենի (անգլ., 2007) զուգադր. լեզվագիտ. ուսումնասիրությունների ևն: Թարգմ-յուններ է արել (հայ-ից անգլ., գերմ. և հակառակը): Խմբագրել, թարգմանել (11 լեզվով) և հրատարակել է «Զմյուռնիա 1922: Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը» (1995):

Գերմանիայի Դաշնության «Արժանյաց կարգի խաչ» (2001), ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշան (2005), ՀՀ ԿԳՆ ոսկե մեդալ (2011) ևն:

ՍԱՔԱՆՅԱՆ Սարգիս Շամիրի (1908–1986), դեղաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1950), պրոֆ. (1950): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1968): ՀԽՍՀ-ում իմունադեղաբանության հիմնադիրներից: Բացահայտել է ֆագոցիտային պաշտպ. ֆունկցիայի կապը նյարդ. համակարգի գործունեության հետ, պարզաբանել իմունադեղաբանության կիրառ. նշանակությունը, տվել դրա գիտ. հիմնավորումը:

ՍԱՔԱՆՅԱՆ Վահարի Արտավազդի (ծ. 1950), բժիշկ, մոլ. կենսաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1987), պրոֆ. (1988): 1992-ից՝ Նանտի (Ֆրանսիա) համալսարանում: Զբաղվում է գենային ճարտարագիտ. եղանակներով կենսաբանորեն ակտիվ նյութերի (ֆերմենտներ, վիտամիններ, ամինաթթուներ) շտամատադրիչների ստացման, «սպիտակուցային չիպերի» արտադր-յան հարցերով: Ֆրանսիայի գիտ-յան նախ-յան Տեխնոլոգ. նորարարությունների ազգ. 3-րդ (2001) և 4-րդ (2002) մրց-ներ:

ՍԱՔԱՐԻԱ, գետ Թուրքիայի հս-արմ-ում: Երկ.՝ 790 *կմ*, ավազանը՝ մոտ 65 հզ. *կմ*²,

ջրի միջին ծախսը՝ մոտ 200 *մ³/վ*: Հոսում է Անատոլ. սարավանդով, թափվում Սև ծովը: Ս–ի ափերին 23.08–13.09.1921–ին տեղի է ունեցել հույն–թուրք. պատերազմի (1919–22) խոշոր ճակատամարտը:

ՍԱՔՍ (Sax) Ադոլֆ (1814–1894), փող. երաժշտ. գործիքների բելգիացի վարպետ: Ստեղծել է ***սաքսոֆոնը*** (1841) և նրա տեսակները, պղնձե փող. գործիքների նոր ընտանիքներ՝ սաքսհոռններ և սաքստրոմբոններ:

ՍԱՔՍ (Sachs) Հանս (1494–1576), գերմանացի բանաստեղծ–մեյստերզինգեր: Եղել է դերասան և թատեր. սիրող. խմբի ղեկ.: 1551–60–ին գլխավորել է Նյուրնբերգի մայստերզինգերների գիլդիան: Հեղինակ է 6 հգ–ից ավելի ստեղծագործությունների: «Ավետյաց երկիր» (1530), «Դպրոցականը դրախտում» (1550) և այլ ֆարսերում անդրադարձել է բյուրգերյան բարոյականությանը:

ՍԱՔՍ Յուլիուս (1832–1897), գերմանացի բուսաբան: Բույսերի փորձարար. ֆիզիոլոգիայի հիմնադիրներից: Աշխ–ները վերաբերում են լուսասինթեզին, բույսերի ձևագոյացմանը, աճին ու շարժումներին: Հեղինակ է «Բուսաբանության պատմություն սկսած 16–րդ հարյուրամյակից մինչև 1860 թ.» (1875) դաս. աշխ–յան:

ՍԱՔՍԱՄԱԻԼ (Haloxylon), թեղուկազգիների ընտանիքի ոչ խոշոր ծառերի ու թփերի ցեղ: Բարձր.՝ մոտ 12 *մ*: Հայտնի է 10 տեսակ՝ Ասիայի կիսաանապատներում և անապատներում: Փայտանյութը վառելափայտ է, կանաչ ընձյուղները՝ ուղտերի և ոչխարների կեր:

ՍԱՔՍԵՐ (Sachsen), գերմ. ցեղերի խումբ: III–IV դդ–ում միավորվել են ցեղ. միության մեջ: Բնակվել են Հս. Գերմանիայում: V դ.–VI դ–ի 1–ին կեսին Ս–ի մի մասը վերաբնակվել է Բրիտանիայում: Մայրցամաքային Ս–ին 772–804–ին հպատակեցրել են ֆրանկները:

ՍԱՔՍՈՆԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ, գերմանացի թագավորներ՝ 919–1024–ին, Հռոմ. սրբազան կայսրության կայսրեր՝ 962–1024–ին: Հիմնադրել է ***Հայնրիխ I***–ը, գլխ. ներկայացուցիչը՝ ***Օտտոն I***:

ՍԱՔՍՈՆԻԱ (Sachsen), 1. ***սաքսերի*** բնակության վայրը, որտեղ նրանք հիմնադրել են իրենց դքսությունը (IX դ–ի վերջ–1180, զբաղեցրել է ժամանակակից Ներքին Սաքսոնիայի տարածքը): 2. Պատմ. մարզ Արլ. Գերմանիայում: Ս–ի միջուկը եղել է Մեյսենի մարկան (ստեղծվել էր X դ–ում՝ սերբա–լուժիչ. խմբի պոլաբյան սլավոններից գերմանացիների զավթած հողերից): Վիեննայի խորհրդաժողովի (1814–15) որոշմամբ Ս–ի տարածքի մոտ կեսն անցել է ***Պրուսիային***: 3. Երկիր Հվ–արլ. Գերմանիայում: Տարածքը՝ 18,3 հգ. *կմ²*, բն.՝ 4,7 մլն (1992): Վարչ. կենտրոնը՝ ***Դրեզդեն***:

ՍԱՔՍՈՆՅԱՆ ՇՎԵՅՑԱՐԻԱ (Sachsische Schweiz), հանք. լեռների սարահարթ. շրջան Գերմանիայի հվ–արլ–ում՝ Սաքսոնիայում: Բարձր.՝ 500–700 *մ*: Կտրտված են Էլբա գետի և նրա վտակների կիրճերով: «Ս. Շ.» անվանումը կապված է ռելիեֆի արտասովոր ձևերի (աշտարակներ, կամարներ, աղաբյուրեղներ) և լանդշաֆտի գեղեցկության հետ: Զարգացած է զբոսաշրջությունը:

ՍԱՔՍՈՖՈՆ (գերմ.՝ Saxophon), պարզ լեզվակավոր մետաղե փող. երաժշտ. գործիք՝ կոնաձև փողով, ընդլայնված և դեպի վեր թեքված փողաբերանով: Ստեղծել է Ա. ***Սաքսը*** (արտոնագիր՝ 1846): Ս–ների ընտանիքը բաղկացած է 7 գործիքից: Օգտագործվել է նախ՝ ջազ. և փող., ապա՝ սիմֆ. (Կ. Դեբյուսի, Մ. Կ. Գլազունով, Է. Հովհաննիսյան և ուր.) նվագախմբերում:

ՍԱՖԱՐՅԱՆ Ալբերտ Անուշավանի (ծ. 1963), դերասան: ՀՀ վաստ. արտիստ (2013): 1988–96–ին՝ Թբիլիսիի հայկ. դրամատիկ. (Զամբախով՝ Գ. Սունդուկյանի «Խաթաբալա», Ռեզո՝ Լ. Բաբուկաշվիլու «Պատուհանից դուրս գարուն է»), 1996–ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. (Իշխան՝ Լ. Շանթի «Հին աստվածներ», Սթիվ՝ Թ. Ուիլյամսի ««Տրամվայ» ցանկություն», Հասան Զալալ՝ Մուրացանի «Ռուզան», Քսանթոս՝ Գ. Ֆիգեյրեդոյի «Եզոպոս», ևն) թատրոնների դերասան: Նկարահանվել է «Բանտապետը», «Գարեգին Նժդեհ» գեղ. ֆիլմերում, նաև հեռուստասերիալներում ևն: Վ. Աճեմյանի անվ. (1991), «Լավագույն դերասան» (Թբիլիսի, 1991) մրց–ներ:

ՍԱՖԱՐՅԱՆ (Սաֆարով) Արամ Հովակիմի (1913–1944), գվարդիայի ավագ լեյտ.: ԽՄ հերոս (1945, հետմահու): Եղել է գնդացր. վաշտի հրամ.: Հերոսի կոչման արժանացել է Հարավսլավիայում ռազմ. գործողությունների ժամանակ ցուցաբերած խիզախության և անձնազոհության համար:

ՍԱՖԱՐՅԱՆ Արմեն Գևորգի (ծ. 1976), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (2016): Աշխ–ները վերաբերում են հանր. կառավարման և հարկաբյուջետ. քաղ–յան խնդիրներին:

ՍԱՖԱՐՅԱՆ Գառնիկ Հրաչիկի (ծ. 1951), իրավաբան: Իրավաբ. գիտ. դ–ր (2002): Աշխ–ները վերաբերում են պետության և իրավունքի տեսության ու պատմության, քաղ. և իրավ. ուսմունքների պատմության, համեմատ. իրավագիտ–յան խնդիրներին:

ՍԱՖԱՐՅԱՆ Դերենիկ Լևոնի (ծ. 1923), այգեգործ–ընտրասերումնաբան: Գղտ. գիտ. թեկնածու (1963): ՀՀ պատվ. ագրոնոմ: Աշխ–ները վերաբերում են խաղողի վազի ագրոկենսբ., օրգանագոյացման առանձնահատկություններին: Աշակել է խաղողի վազի էտի, ձևավորման, կանաչ հատումների սկզբունքներ, վեգետատիվ բազմացման արդյունավետ եղանակներ: Համահեղինակ է խաղողի 10 սորտի:

ՍԱՖԱՐՅԱՆ Էդուարդ Արամի (1923–2015), ճարտ.: ՀՀ վաստ. ճարտ. (1971): Նրա նախագծերով Երևանում կառուցվել են Կինոյի տունը (1975), դեկորատիվ շատրվան Նորքի զանգվածում (1982), Զեյթուն թաղամասի հանգստի գոտին (1985), «Ախ» և «Վիխ» (1978, ՀՀ Պետ. մրց.՝ 1979) հյուրանոցները, «Հայաստան» կինոթատրոնը (1985), Երևանի ԺՏԻ համալիրը (1991, այժմ՝ Ռազմ. ինստ–ի ուս. մասնաշենք) ևն: Խորհրդ. ճարտ–յան նվաճումների համամիութ. ստուգատեսների (1958, 1967, 1972, 1985) դափնեկիր:

ՍԱՖԱՐՅԱՆ Լիա Սամվելի (1932–2000), ճարտ.: Սամվել Ա. ***Սաֆարյանի*** դուստրը: Ս–ի նախագծերով (համահեղ.) Երևանում կառուցվել են ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտ–յունների ինստ–ների շենքը (1972), Դիլիջանում՝ Կինեմատոգրաֆիստների տան քոթեջները (1984), Մոգադիշոյում՝ հոսպիտալ (1972): Հեղինակ է «Ճարտարապետ» տեղեկագրքի (ռուս., 1998) և այլ գրքերի: «Տարվա լավագույն կառույց» համամիութ. ստուգատեսի դափնեկիր (1984):

ՍԱՖԱՐՅԱՆ Մարգարիտա Ներսեսի (ծ. 1936), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1996): Աշխ–ները վերաբերում են ֆիզքիմ. կինետիկային, ռելաքսացիոն շարժընթացների տեսությանը: Առաջարկել է Ֆոկեր–Պլանկի տիպի հավասարումների օգտագործման վրա հիմնված գործն. ֆիզիկայում կիրառելի մաթ. մեթոդ:

ՍԱՖԱՐՅԱՆ Մարիա Դմիտրիի (ծ. 1953), ֆթիզիատր: Բժշկ. գիտ. դ–ր (1992), պրոֆ. (1993): Առաջարկել է տուբերկուլոզի ակտիվության որոշման մեթոդ: Հետազոտել է Հայաստանում տուբերկուլոզի համաճարակաբանությունը՝ հիվանդների և ռիսկի խմբերի շրջանում, ուսումնասիրել հակատուբերկուլոզ. պատրաստուկների արդյունավետությունը: ՀՀ ԱՆ գլխ. ֆթիզիատր (1994–ից), Հայաստանում տուբերկուլոզի դեմ պայքարի ԱՀԿ ծրագրի ղեկ. (1996–ից), ՀՀ ֆթիզիատրների ընկերակցության նախագահ (1997–ից):

ՍԱՖԱՐՅԱՆ Յուրի Աշոտի (ծ. 1937), ճարտ.: ՀՀ վաստ. ճարտ. (1987): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2009): ՀՃԱ ակադ. (1993): Պրոֆ. (1991): ՌՃԾ ԳԱ արտ. անդամ (2017): Համահեղինակ է Երևանի Նորաշեն թաղամասում՝ ծածկերի բարձրացման եղանակով կառուցված բնակելի և հաս. համալիրների նախագծերի:

Տարվա լավագույն կառույցի համամիութ., հանրապետ. մրցույթ–ստուգատեսների, Սոֆիայի «Բիենալե–83»–ի և «Բիենալե–86»–ի դափնեկիր, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2002):

ՍԱՖԱՐՅԱՆ Նվեր Գևորգի (1907–1982), գեն–մայոր (1943): 1942–ի հունիսից՝ 295–րդ դիվիզիայի հրամ., մասնակցել է Կովկասի պաշտպ–յանը: 1943–ի փետր–ից՝ Հայկ. 89–րդ (Թամանյան) դիվիզիայի հրամ., մասնակցել է Նովոռոսիյսկի, Թաման թ–կղզու, 1945–ին՝ Ֆրանկֆուրտի, Բեռլինի գրավմանը: 1949–ին զորացրվել է: Լենինի, Կարմիր դրոշի (4), Սուվորովի, Կուտուզովի 2–րդ աստիճանի, «Պատվո նշան» շքանշաններ և մի շարք մեդալներ:

ՍԱՖԱՐՅԱՆ Սամվել Առաքելի (1902–1969), ճարտ.: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1940), վաստ. ճարտ. (1968): Պրոֆ. (1944): ԽՍՀՄ ճարտ. ակադ–ի անդամ (1950): Լիա ***Սաֆարյանի*** հայրը: Հեղինակ է Երևանում՝ Քիմ. գործարանի բանվ. բնակելի թաղամասի (1932–34), «Պրոֆեսորների տան» (1934), Պուշկինի անվ. դպրոցի, ՀՀ ԳԱԱ նախագահության (1954) և ինստ–ների (համահեղ., 1955–72) շենքերի, Կառ–յան 2–րդ տան (1947–53, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1970, հետմահու), Արզնիի № 2 առողջարանի (1933–53), Բյուրականի աստղադիտարանի համալիրի (1947–56), Գյումրիի դրամատիկ. թատրոնի (1965–72), Վանաձորում՝ ԵՊԻ մասնաճյուղի համալիրի (1968–70) նախագծերի, համահեղ.՝ «Հայկական ճարտարապետության հուշարձանները» (ռուս., 1951) գրքի:

ՍԱՖԱՐՅԱՆ Սամվել Մոսկովի (ծ. 1945), ՀՀ ներքին ծառայության գեն–մայոր (1993), բանաստեղծ: Մասնակցել է Արցախյան գոյամարտին. նրա նախաձեռնությամբ կապանում հիմնադրվել է գումարտակ: Հեղինակ է ավելի քան 8 գրքի: ՀՀ «Վարդան Սամիկոնյան» շքանշան (2010):

ՍԱՖԱՐՅԱՆ Սարգիս Համբարձումի (1898–1975), նկարիչ: ՀԽՍՀ վաստ. նկա–

րիչ (1965)։ Հայ կինոնկարչության հիմնադիրներից։ Սուրեն ***Սաֆարյանի*** հայրը։ Ձևավորել է «Լեռնային հեղեղ» (1939), «Անահիտ» (1947, Ալեքսեյ ***Դանդուրյանի***, Յ. Շվեցի հետ), «Պատվի համար» (1956), «Նվազախմբի տղաները» (1961, վերջին երկուսը՝ Սերգեյ ***Արուտչյանի*** հետ) և այլ ֆիլմեր։

ՍԱՖԱՐՅԱՆ Սուրեն Սարգսի (1923–1988), նկարիչ։ ՀԽՍՀ ժող. նկարիչ (1977)։ Պրոֆ. (1978)։ Սարգիս ***Սաֆարյանի*** որդին։ Հեղինակ է պատերազմի («1945-ի գարնանը», 1964, ևն), հայ ժողդ–ի պատմ. ճակատագրի («Հանուն գալիքի», 1960, ևն) թեմաներով գործերի, դիմանկարների («Ե. Չարենց», 1959, «Ինքնանկար», 1979, ևն), բնանկարների («Արարատը գարնանը», 1971, 1979, ևն), ճամփորդ. թեմայով գեղանկարչ. և գրաֆիկ. գործերի, ձևավորել է գրքեր։

ՍԱՖԱՐՅԱՆ Վազգեն Հմայակի (ծ. 1947), գրականագետ։ Բանասիր. գիտ. դ–ր (1992), պրոֆ. (1993)։ Հեղինակ է «Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» թեմաները հայ նոր գրականության մեջ» (1969), «Կիլիկյան Հայաստանի գրականությունը» (ԺԱ դարի վերջ–ԺԳ դարի սկիզբ)» (1990), «Գրողի և կերպարի անհատականությունը» (2001), «Միջնադարի հայ գրականության պարբերացման հիմունքները» (2012) աշխ–ների։

ՍԱՖԱՐՅԱՆ Վաչե Հմայակի (ծ. 1929), գրականագետ, բանասեր։ Հեղինակ է «Մկրտիչ Պեշիկթաշլյան. Կյանքը և ստեղծագործությունը» (1972), «Նաիրի Զարյան. Կյանքը և ստեղծագործությունը» (1980) աշխ–ների, «Ազատն Մինասը» (1999) գրույցների և հուշերի ժող–ի։

ՍԱՖԱՐՅԱՆ Վրեժ (Էդուարդ) Իսրայելի (ծ. 1924), կանադահայ տնտեսագետ։ Տնտեսագիտ. դ–ր (1956), Տորոնտոյի համալսարանի պրոֆ. (1966)։ 1971–76–ին՝ նույն համալսարանի 2–րդ նախագահ։ Աշխ–ները վերաբերում են Կանադայի ներքին ու արտաքին տնտ. քաղ–յանը։ Կանադայի տնտեսագետների ընկերակցության նախագահ (1977–78)։

ՍԱՖԱՐՅԱՆ Ֆելիքս Պետրոսի (1940–2001), ֆիզիկոս։ Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1989), պրոֆ. (1990)։ Աշխ–ները վերաբերում են լազեր. բյուրեղների օպտիկ. սպեկտրների վրա էլեկտրոն–ֆոնոնային ներգործությանը։ Ստեղծել է լազեր. բյուրեղների սպեկտրների բնութագրերի հաշվման քանակ. տեսություն։

ՍԱՖԱՐՈՎ Երեմ Զումշուդի (1906–1992), էներգետիկ։ Տեխ. գիտ. դ–ր (1951), պրոֆ. (1952)։ ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1965)։ Աշխ–ները վերաբերում են ջրատնտ. համալիրների էներգատնտ. հաշվարկի մեթոդներին, էլեկտրակայանների հարաչափերի հաշվարկի խնդիրներին։

ՍԱՖԱՐՈՎ (Սաֆարյան) Վյաչեսլավ Իվանի (ծ. 1940), ֆիզիկոս։ Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1981), պրոֆ.։ Ս. Պետերբուրգի «RASA–СПбПУ» ԳՀ կենտրոնի հիմնադիրղեկ. (2008–10–ին և 2015–ից)։ Աշխ–ները վերաբերում են կիսահաղորդիչներում սպինային փոխազդեցությունների օպտիկ. դրսևորումներին, իրականացրել է կիսահաղորդչային բյուրեղներում ցանցի միջուկի միջուկամագնիս. և միջուկաքվարդրուպոլային ռեզոնանսի օպտիկ. դետեկտումը, ստացել կիսահաղորդիչների մակերևույթում խզված կապերով առաջացած էլեկտրոն. վիճակների օպտիկ. անդամների սպեկտրները։ ԽՍՀՄ Պետ. մրց. (1976)։

ՍԱՖԻ, ք. Մարոկկոյում, Դոկկալա–Աբդա մարզի վարչ. կենտրոնը։ Բն.՝ 305 հզ. (2010)։ Նվինգստ՝ Ատլանտ. օվկ–ի ափին։

ՍԱՖՅԱՆ Շողիկ Սերգեյի (1916–1995), բանաստեղծուհի, արձակագիր, թարգմանչուհի։ Հեղինակ է քնար. «Կարոտի երգեր» (1947), «Մեր երգը» (1953) չափածո և «Մի հին հեքիաթ է սա» (1963) արձակ բանաստեղծությունների, «Ամենալավ նվերը» (1949) պատմվածքների ժող–ների։ Թարգմանել է Ռուդաքիի, Վ. Կ. Լերեղևի, Ա. Տամսաարեի, Մ. Ռահիմի գործերից։

ՍԱՖՅԱՆ Սպարտակ Գևորգի (1929–2001), նկարիչ։ ՀՀ վաստ. նկարիչ (1975)։ Պրոֆ. (2000)։ Ստեղծել է հաստոց. գրաֆիկ. գործեր, դիմանկարներ, նատյուրմորտներ («Երիտասարդություն», 1965, «Գուրգեն Ադամյանի դիմանկարը», 1971, ևն), գրքի ձևավորումներ (Խնկո–Ապոր «Առակները», 1985, Հ. Թումանյանի «Չարի վերջը», 1987, ևն)։

ՍԱՖՅԱՆՑ Հովհաննես Հովսեփի (1905–1992), մետաղագետ։ Լենինգրադի պողպատագլոգման գործարանի տնօրեն (1946–57)։ Աշխ–ները վերաբերում են մետաղագործ. արտադր–յունների կառավարման հարցերին։ ԽՍՀՄ Պետ. մրց. (1951)։

ՍԱՖՈ, **Սապֆո**, մ. թ. ա. VII–VI դդ–ի հույն բանաստեղծուհի։ Հեղինակ է եղերերգերի, հիմների, հարսանեկան երգերի, որոնց հիմն. թեման սերն է ու գեղեցկությունը, բնությունը։ Առավել հայտնի է Ս–ի «Հիմն Աֆրոդիտեին» բանաստեղծությունը։

ՍԱՖՈՆՈՎ Վասիլի Իլյիչ (1852–1918), ռուս. դաշնակահար, դիրիժոր, մանկավարժ։ 1889–1905–ին՝ Ռուսաստանի երաժշտ. ընկ–յան Մոսկվայի բաժանմունքի սիմֆ. համերգների, 1906–09–ին՝ Նյու Յորքի ֆիլհարմոնիկ նվագախմբի դիրիժոր (Պ. Ի. Չայկովսկու և Ա. Կ. Գլազունովի մի շարք երկերի առաջին կատարողը)։ Դիրիժոր. արվ. է ներմուծել առանց փայտիկի ղեկավարման ձևը։

ՍԱՖՐԱԶԲԵԿՅԱՆ Իրմա Ռուբենի (ծ. 1933), գրականագետ։ Բանասիր. գիտ. դ–ր (1982)։ Հովհաննես ***Թումանյանի*** թոռնուհին։ Հեղինակ է «Հովհաննես Թումանյանը և համաշխարհային գրականությունը» (1976), «Նիկիտա Բալիևը և նրա «Ձղջիկ» թատրոնը» (1980) աշխ–ների։ Կազմել և ձանոթագրել է «Վ. Բրյուսովը Հայաստանի և հայ մշակույթի մասին» (1963), «Հովհաննես Թումանյանը Շեքսպիրի մասին» (1969), «Ա. Գորոդեցկին Հայաստանի և հայ մշակույթի մասին» (1974, բոլորն էլ՝ ռուս.) և այլ ժող–ներ։

ՍԱՖՐԱԶԲԵԿՅԱՆ Վալենտինա Միքայելի (1925–2006), անասնաբույժ–դեղաբան։ Անասնաբուժ. գիտ. դ–ր (2004), պրոֆ. (1999)։ Աշխ–ները վերաբերում են գղտ. կենդանիների ստամոքսաղիք. համակարգի կենսընթացների վրա սուլֆանիլամիդ. պատրաստուկների ազդեցության մեխանիզմներին։

ՍԱՖՐԱԶՅԱՆ, դերասաններ, թատեր. գործիչներ։ **Ստեփան Մանվելի Ս.** (1853–1913)։ 1874–ից՝ Գևորգ ***Զմշկյանի***, 1879–82–ին՝ Թիֆլիսի հայկ. թատերախմբերի դերասան (Պեպո՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», Ֆրանց՝ Ֆ. Շիլլերի «Ավազակներ», Օթելլո՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո») ևն։ Բեմադրել է Սունդուկյանի «Պեպոն» (1888, ադրբ.)։ Կինը՝ **Ալմա Հովսեփի Ս.** (Գելոյան Վարդանուշ, 1859–1932)։ Ադրբ. ԽՍՀ վաստ. արտիստ (1926)։ Խաղացել է բնութագր. և դրամատիկ. դերեր (Օֆելյա՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», Պ. Ադամյանի խաղընկերությամբ, Կեկել, Շուշան՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», ևն)։

ՍԱՖՐԱՍՏՅԱՆ Ռուբեն Արամի (ծ. 1955), պատմաբան, արևելագետ–թուրքագետ։ Պատմ. գիտ. դ–ր (2009), պրոֆ. (2007)։ ՀՀ ԳԱԱ ակադ. (2014, թղթ. անդամ՝ 2010–ից)։ ՀՀ ԳԱԱ արևելագիտ–յան ինստ–ի տնօրեն (2006–ից)։ ՀՀ նախագահին կից հանրային խորհրդի հանձնաժողովի նախագահ (2010)։ Աշխ–ները վերաբերում են Թուրքիայի նոր և նորագույն պատմությանը և Հայոց ցեղասպանության ուսումնասիրման հարցերին

ՀՀ «Մովսես Խորենացի» (2008), ՊՆ «Գարեգին Նժդեհ» (2010) մեդալներ։

ՍԳԱԹԻԹԵՆ, նիմֆալիդների ընտանիքի մեծ սև թիթեռ։ Թևերի բացվածքը՝ մինչև 35 *սմ*։ Բալագույն–գորշ, ներքևից՝ սև՝ դեղնավուն–սպիտակ երիզով։ Հանդիպում է Հս. կիսազնդի բարեխառն գոտում։ Թրթուրներն ապրում են կեչու, ուռենու, հազվադեպ՝ այլ ծառերի տերևների վրա։

ՍԳՕ ԵՐԳԵՐ, լացի (լալիքի) ու կոծի, ողբի երգեր, մահերգեր, բանահյուս. ծիսերգ. բանաստեղծություններ։ Բնորոշ է հանգուցալին ուղղված գովքը։ Բաղկացած են քնարավիպ. մի քանի երկտող տներից։ Հնագույն Ս. ե. հորինվել են ***հայրենի*** չափով։ Եղել են ողբասաց–կատարողներ, հիմնականում՝ կանայք (գլխ–ը կոչվել է «մայր ողբոց» կամ «եղերամայր»)՝ «ձայնարկուներ» կամ «բանահիւս կանայք լալականք» (Գրիգոր Նարեկացի)։ Տես նաև ***Ողբ***։

ՍԵԱՏՕ (SEATO, անգլ.՝ South–East Asia Treaty Organization – Հվ–արլ. Ասիայի պայմանագրի կազմ–յուն), ռազմաքաղ. կազմ–յուն։ Ձևավորվել է 1954–ի սեպտ–ին Մանիլայում (Ֆիլիպիններ) կնքված պայմանագրով, որին մասնակցել են ԱՄՆ, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Ավստրալիան ևն։ 1975–ի սեպտ–ին որոշվել է լուծարել կազմ–յունը, 1977–ի հունիսին ինքնալուծարվել է։

ՍԵԲԱՍՏԻԱ, **Սվազ**, ք. Փոքր Հայքում՝ Ալիս (Հալիս) գետի աջ ափից ոչ հեռու, Սեբաստիա նահագ–ի վարչ. կենտրոնը։ Դիոկղետիանոս կայսեր օրոք (284–305) Ս. եղել է Փոքր Հայքի, Կոստանդին Ա Մեծի 335–ի վարչ. բաժանմամբ՝ Առաջին Հայքի, 536–ի բաժանմամբ՝ ***Երկրորդ Հայքի*** կենտրոնը։

1021–ին Վասպուրականի թագավոր ***Սենեքերիմ–Հովհաննեսը*** հաստատվել է իր երկրի փոխարեն Բյուզ. կայսրությունից ստացած Ս–ում և նրա շրջակայքում։ 1400–ին Լանկ Թամուրը, գրավելով Ս., ոչնչացրել է մոտ 4 հզ. հայ զինվորներ։ 1413–ին Ս. գրավել են օսմ. թուրքերը։ 1890–ական թթ–ին ունեցել է 65 հզ. բն., որոնցից 30 հզ–ը՝ հայ։ Ս–ում եղել են 6 հայկ. եկեղեցիներ (5–ը՝ առաքել.), բազմաթիվ դպրոցներ, 3 տպարան։ 1870–ից գործել է թատեր. ընկ.։ 1895–96–ին հայկ. կոտորածների զոհ է դարձել 1000 հայ։ ԱՀՊ–ի նախօրյակին Ս–ում բնակվել է մոտ 35 հզ. հայ։ Մեծ եղեռնի ժամանակ նրանց մեծ մասը բռնությամբ քշվել է Դեյր էզ Զոր և կոտորվել։ Փրկվածները պատերազմից հետո կրկին հաստատվել են Ս–ում։ Նրանց մի մասը տեղափոխվել է Խորհրդ. Հայաստան և հիմնադրել Երևանի Նոր Ս. թաղամասը։ Այժմ Ս.

Թուրքիայի համանուն իլի վարչ. կենտրոնն է, որտեղ բնակվում են մի քանի տասնյակ հայ ընտանիքներ, գործում է հայկ. եկեղեցի:

ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ԲԱՐԲԱՌ, հայ-ի «կը» ճյուղի բարբառ: Խոսվել է Փոքր Հայքի Սեբաստիա ք-ում և նրա շրջակա գյուղերում: Ունի եռաստիճան խլազուրկ (բ՛–բ–փ) բաղաձայն. համակարգ:

ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, միջնադար. հոգևոր և մշակույթի կենտրոն: Մեզ հայտնի առաջին մատյանը *«Սեբաստիայի Ավետարան»*-ն է (Մտնդ., ձեռ. № 311): Այստեղ ձեռագրեր են ընդօրինակել Վարդե քհն-ի որդի Պապերը (1193-ին), *Հայրապետ* գրիչն ու Հովհաննես ծաղկողը (1200, 1211-ին, Մտնդ., ձեռ. № 987, 2589), Նորոգես գրիչը (1222-ին), Աստվածատուր գրիչը (1239-ին) և ուր.: XIII դ-ի սկզբին մոնղ. նվաճումների պատճառով մշակութ. կյանքն անկում է ապրել: Մեզ հայտնի մյուս մատյանն ընդօրինակվել է 1313-ին: Բազմաթիվ ձեռագրեր են ընդօրինակվել նաև հետագա դարերում, հատկապես՝ XVII դ-ում: Դրանց զգալի մասը Մտնդ-ում են:

ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ԺՈՂՈՎ 1562, Հայաստանը պարսկա-թուրք. տիրապետությունից ազատագրելու նպատակով հրավիրված գաղտնի խորհրդակցություն՝ *Միքայել Ա. Սեբաստացու* նախագահությամբ: Ազատագրության միակ հնարավոր ուղին համարելով արևմտաեվրոպ. տերությունների օժանդակությունը՝ Ս. ժ. վճռել է դիմել Հռոմի Պիոս IV պապին: Դիմումները տանելու համար ընտրվել է հատուկ պատվիրակություն՝ *Աբգար Թոխաթեցու*, նրա որդի *Սուլթանշահ Աբգարյան Թոխաթեցու* և Ալեքսանդր Երեցի մասնակցությամբ:

ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Սեբաստիայում (այժմ՝ Սվազ՝ Թուրքիայում) 1-ին տպարանը հիմնադրել է Անդրանիկ Վարդանյանը: 1908-ին տպարան է հիմնադրել նրա որդին՝ Հայկ Վարդանյանը: 1910–12-ին գործել է Կարապետ Պարսամյանի «Հողդար», 1913-ին՝ «Կաբիրա» տպարանը: Սեբաստիայում լույս են տեսել նաև մի շարք թերթեր:

ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ, **Սեբաստիայի (Սվազի) վիլայեթ**, վտմ Արմ. Հայաստանում՝ Փոքր Հայքի տարածքում, հիմնականում՝ Գայլ և Ալիս գետերի ավազանում: Վարչ. կենտրոնը՝ *Սեբաստիա* (Սվազ) ք.:

XV դ-ի 1-ին կեսին տարածքը գրավել են օսմ. թուրքերը և կազմել Արմ. Հայաստանի 1-ին վարչատարածք. էյալեթը: XIX դ-ի 1-ին կեսին բաժանվել է 7 գվո-ի (լիվա կամ սանջակ): XIX դ-ի վերջ–XX դ-ի սկզբին Ս. ն. ընդգրկել է 62,000–83,700 *կմ*^{2} տարածություն: 1894–96-ին նահց-ում արդուհամիդ. կոտորածների ժամանակ զոհվել է 20–25 հզ. հայ: ԱՀՊ-ի նախօրյակին Ս.ն. Արմ. Հայաստանի ամենահոծ հայաբնակ (մինչև 418 հզ.) նահգ-ն էր: Հարյուրավոր գյուղերից բացի՝ հայերը մեծ թիվ են կազմել Սեբաստիա, Շապին Գարահիսար, Եվդոկիա, Ամասիա, Մարզվան ք-ներում:

Մեծ եղեռնի ժամանակ հայերի մեծ մասը ոչնչացվել է Հալեպի ճանապարհին և Դեյր էզ Զորում: Փրկվել են ընդամենը 16 800-ը, նրանց մի մասը պատերազմի ավարտից հետո վերադարձել է նախկին բնակավայրերը: 1920–30-ական թթ-ին սեբաստահայերի մի մասը տեղափոխվել է Խորհրդ. Հայաստան, իսկ մյուսները գաղթել են տարբեր երկրներ: Այժմ Սեբաստիայում, Մարզվանում և այլ բնակավայրերում ապրում են հարյուրավոր հայ ընտանիքներ, որոնց մեծ մասը թրքախոս է և ծպտված: Ս. ն-ի տարածքը հիմնականում համընկնում է Թուրքիայի Սվազի, Թոխաթի և Ամասիայի իլերի տարածքներին:

ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ՎԱՆՔ, ճարտ. համալիր Սեբաստիայից հս-արլ.՝ Մայրագոմ լ-ան ստորոտին: 1022-ին հիմնադրել է Սենեքերիմ-Հովհաննես Արծրունու որդի Ատոմը: Քառակուսի հատակագծով քառախորան գմբեթավոր Սբ Աստվածածին եկեղեցուն կից էր Սբ Նշան եկեղեցին (XI դ.): 3-րդ՝ Սբ Կարապետ գմբեթավոր եկեղեցին, ըստ ավանդության, հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը: 1781-ին կառուցվել են սեղանատունը, երկհարկ հյուրատունը, 1842-ին՝ Սբ Հովհաննես Ոսկերերաան եկեղեցին: 1915-ին վանքը լքվել է և ամայացել:

ՍԵԲԱՍՏԻԱՆ (Sebastian, III–IV դդ.), քրիստոնյա սուրբ, նահատակ: Հետապնդվել է Հռոմի *Դիոկղետիանոս* կայսեր հալածանքների ժամանակ (նետահարվել է և քարկոծվել): Ս-ի ենթադրյալ գերեզմանի վրա կառուցվել է վաղքրիստ. հռոմ. 7 եկեղեցիներից մեկը: Ս-ի կերպարին լայնորեն անդրադարձել են կերպարվ-ում:

ՍԵԲԵԿ, պտղաբերության աստվածություն եգիպտ. դից-յան մեջ, ջրի աստվածը. կառավարել է Նեղոսի հեղեղումները: Ս-ի պաշտամունքի կենտրոնը Շեդիթ (հուն. – Կոկորդիլոսաքաղաք) ք-ն է: Ֆայումյան օազիսում: Պատկերվել է կոկորդիլոսի կամ կոկորդիլոսի գլխով մարդու կերպարանքով:

ՍԵԲԵՈՍ, VII դ-ի պատմիչ: Գրել է հիմնականում VI–VII դդ-ի պատմությունը՝ հասցնելով մինչև 661 թ.: Հիշվում է նաև Սեբիոս, Սեբեոս Եպիսկոպոս, Եվսեբիոս անուններով: Ս-ի երկը բաղկացած է 2 բաժնից: 1-ինը պարունակում է Հայաստանի հնագույն պատմությունը և մինչև VII դ. ընդգրկող դեպքերի համառոտ ժամանակագրությունը: 2-րդը կարևոր սկզբնաղբյուր է VI–VII դդ-ի իրադարձությունների մասին: Ս. իր ժամանակի պատմությունը շարադրել է համաշխ. պատմ. իրադարձությունների համատեքստում: Երկն առաջին անգամ հրատարակվել է «Պատմութիւն ի Հերակլն» խորագրով 1851-ին:

ՍԵԲՈՈՒԵԱ, **ճարպահոսություն** (seborrhoea, < լատ. sebum – ճարպ և հուն.՝ reo հոսել), մաշկի հիվանդագին վիճակ, որը պայմանավորված է ճարպահոսության ուժեղացմամբ՝ մաշկի ճարպ. գեղձերի նյարդ. և նեյրոներզատիչ ֆունկցիաների հետևանքով:

ՍԵԲՈՒ (Cebu), կղզի Ֆիլիպին. կղզեխմբում: Տարածքը՝ 4,5 հզ. *կմ*^{2}: Բն.՝ 4,167 մլն: Լեռնոտ է: Բարձր.՝ մինչև 1073 *մ*: Զարգացած են արևադարձ. երկրագործությունը, ձկնագործությունը: Վարչ. կենտրոնը Ս.: Բն.՝ 831 հզ. (2010): Նվինգստ է: Ունի օդանավակայան: Ջրոսաշրջության կենտրոն է:

ՍԵԳԵԴ (Szeged), ք. Հունգարիայի Չոնգրադ մեդիեի վարչ. կենտրոնը: Բն.՝ 161,4 հզ. (2010): Նվինգստ՝ Տիսա գետի ափին: Մնդի (մսի պահածո) արդ-յան խոշոր կենտրոն է: Ունի համալսարան: Ս-ում անցկացվում է ամենամյա թատեր. փառատոն: Հայտնի է ֆրանցիսկ. եկեղեցին (XV դ-ի վերջ–XVI դ-ի սկիզբ):

ՍԵԳՄԵՆՏ (լատ.՝ segmentum, < seco – կտրել), 1. շրջանի՝ աղեղով և նրա լարով սահմանազատված հատված: 2. (Մաթ.) ուղղի վրա 2 թվերի կամ կետերի միջև թվերի կամ կետերի բազմությունը (ընդգրկում է նաև a և b ծայրակետերը), նշանակվում է [a, b]:

ՍԵԳՆԵՏՅԱՆ ԱՂ, գինեթթվի կրկնակի աղը՝ $KOOC(CHOH)_2COONa \cdot 4H_2O$, անգույն բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 70–80°C: Հայտնաբերել է (1655) ֆրանսիացի դեղագործ Է. Սենյետը (E. Seignette, 1632–1698), որի անունով և կոչվում է: Ս. ա-ի անունից է ծագել առանձնահատուկ դիէլ. հատկություններ ունեցող նյութերի դասի՝ սեգնետոէլեկտրիկների անվանումը:

ՍԵԳՆԵՏՈԷԼԵԿՏՐԻԿՆԵՐ, որոշակի ջերմաստիճան. միջակայքում ինքնակամ (էլ. դաշտի բացակայության պայմաններում) էլ. բևեռացմամբ օժտված նյութեր: Ս. են *սեգնետյան աղը*, բարիումի տիտանատը ($BaTiO_3$), կալիումի երկհիդրոֆոսֆատը (KH_2PO_4), լիթիումի նիոբատը ($LiNbO_3$) ևն: Հայտնի են հարյուրավոր Ս., այդ թվում՝ սեգնետախեցին: Կիրառվում են պիեզոէլ. փոխակերպիչներում, էլեկտրամագնիս. ճառագայթման դետեկտորներում, ինչպես նաև տարբեր կոնդենսատորներում:

ՍԵԳՆԵԲԻ ԱՆԻՎ, արտահոսող ջրի շիթի ռեակտիվ ազդեցության ցուցադրման սարք: Հորիզոն. դիրքով տեղադրված առանց հեցի անիվ է, որի անվաճաղերը փոխարինված են ծռված ծայրերով խողովակներով այնպես, որ նրանցից արտահոսող ջուրը պտտեցնում է անիվը: Հայտնագործել է հունգար գիտնական Յ. Ա. Սեգները (1704–1777) 1750-ին:

ՍԵԳՈՎԻԱ, (Segovia) Անդրես (1893–1987), իսպանացի կիթառահար: Ընդարձակել է *կիթառի* տեխ. և արտահայտչ. հնարավորությունները, հարստացրել նվագացանկը (սեփ., նաև Յ. Ս. Բախի և ուր. երկերով), կատարող. արվ-ը հասցրել գեղ. բարձր մակարդակի:

ՍԵԳՐԵ (Segrè) Էմիլիո Ջինո (1905–1989), իտալացի ֆիզիկոս-փորձարար: 1938-ից՝ ԱՄՆ-ում: Հայտնագործել է (համահեղ.) առաջին արհեստ. քիմ. տարրերը՝ տեխնեցիումը (1937), աստատը և պլուտոնիում 239-ը (1941), ինչպես նաև *հակապրոտոնը* (1955): Նոբելյան մրց. (1959, Օ. *Չեմբերլենի* հետ):

ՍԵԳՈՒ (Ségou), ք. Մալիի հվ-ում՝ Նիգեր գետի ափին, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 105 հզ. (2010): Գղտ. առևտր. կենտրոն է:

ՍԵԴԱՆ (եզրույթի ծագումն անհայտ է, սովորաբար այն կապում են ֆրանս. Սեդան ք-ի հետ), մարդատար ավտոմեքենայի փակ եռածավալ թափքը՝ 4 դռնով, 2 կամ 3 շարք նստատեղերով:

ՍԵԴԱՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1870, ֆրանս-պրուս. պատերազմի (1870–71) ժամանակ Սեդանի ամրոցի շրջանում (Արդենների դեպարտամենտ) գերմ. զորքերը գեն. Հ. Մոլտկեի հրամանատարությամբ շրջապատել ու ջախջախել են մարշալ Մակ-Մահոնի ֆրանս. բանակը: Վերջինս և կայսր Նապոլեոն III-ը գերի են ընկել, որը խթանել է Երկրորդ կայսրության անկմանը (1870):

ՍԵԴԻԽ Յուրի Գեորգևիչ (ծ. 1955), ռուս մարզիկ (մուրճի նետում): ԽՍՀՄ ս. վ. վ. (1976): Օլիմպ. խաղերի (1976, 1980), աշխարհի (1991), Եվրոպայի (1978, 1982, 1986), ԽՍՀՄ (1976, 1978–80) չեմպիոն:

ՍԵԴՄԱՐ (Բոյախչիևա) Մարիաննա Գրիգորի (1899–1958), երգչուհի (մեցցո-սոպրանո): ՀԽՍՀ ժող. արտիստ. (1950): Շարա *Տալյանի* կինը: 1933-ից՝ ԵՕԲԹ-ի հիմնադիր-երգչուհիներից (Նանի՝ Ա. Տիգրանյանի «Մնուշ», Սոնա՝ Հ. Ստեփանյանի «Լուսաբացին», Կարմեն՝ Ժ. Բիզեի «Կարմեն», ևն):

ՍԵԴՈՎ Գեորգի Յակովլևիչ (1877–1914), ռուս բևեռախույզ, ջրաբան: «Սբ Ֆոկա» նավով 1912-ին կազմակերպել է արշավախումբ դեպի Հս. բևեռ: Ձմեռել է Նոր Երկրում և Ֆրանց Իոսիֆի Երկրում: 1914-ին 2 նավաստու ուղեկցությամբ սահնակներով ուղևորվել է դեպի բևեռ, սակայն Ռուդոլֆի կղզի չհասած մահացել է:

ՍԵԴՈՎ Գրիգորի Ալեքսանդրովիչ (1917–2014), ռուս փորձարկող օդաչու, ավիացիայի գեն–մայոր (1968): ԽՄ հերոս (1957): Փորձարկել է խորհրդ. 1-ին սերիական արտադր-յան ՄիԳ-19 կործանիչը: Ուսումնասիրել է գերձայն. արագության թռիչքները ևն: ԽՍՀՄ Պետ. (1952), Լենինյան (1976) մրց-ներ:

ՍԵԴՈՎ Լեոնիդ Իվանովիչ (1907–1999), ռուս մեխանիկոս: ՌԳԱ ակադ. (1953): Սոց. աշխ. հերոս (1967): Աշխ-ները վերաբերում են հիդրո- և աերոմեխանիկային, հոծ միջավայրի մեխանիկային, գազ. դինամիկային, նմանությունների տեսությանը և մոդելավորմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1952):

ՍԵԴՎԼՈՒ ՎԱՆՔ, Սեդվի Սուրբ Նշան վանք, ճարտ. համալիր ՀՀ Լոռու մարզի Կաճաճկուտ գ–ից 3 *կմ* հվ՝ Սեդվու ձորում: Վանքի Սբ Նշան եկեղեցին (XIII դ.) եղել է թաղածածկ դահլիճ՝ 3 զույգ որմնասյուներով և թաղակիր կամարներով: Հվ. մուտքի առջև քառակուսի հատակագծով սրահն էր (XIII դ.), հվ-ում՝ Սեդվու ամրոցը՝ պարսպապատերի մնացորդներով, եռահարկ դիտաշտարակ-մատուռով, կացարանների հետքերով:

ՍԵԴՐԱԿՅԱՆ Արա Գրիգորի (ծ. 1952), ֆիզիկոս-տեսաբան: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1989), պրոֆ. (2006): Աշխ-ները վերաբերում են դաշտի քվանտ. տեսությանը, լարերի տեսությանը, վիճակագր. ֆիզիկային, պինդ մարմնի ֆիզիկային:

ՍԵԴՐԱԿՅԱՆ (Մելիք-Առաքելյան) Արիստակես Սեդրակի (1845–1906), բանասեր, պատմաբան, եկեղեց. գործիչ: Եպս. (1882-ից): 1867–1906-ին՝ Տաթևի, Արցախի, Վրաստանի, Իմերեթիայի և Ատրպատականի հայոց թեմերի առաջնորդ: Հեղինակ է «Քնար մշեցւոց եւ վանեցւոց» (1874) բանահյուս. նյութերի ժող–ի, «Հնութիւնք հայրենեաց ի գաւառին Երնջակու» (1872), «Յարութիւն Արարատեանի կեղծիքը» (1894), «Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցի կենսագրութիւնը» (1898), «Քահանայական խնդիր» (1900), «Հայաստանեայց եկեղեցւոյ պատկերյարգութիւնը: Պատմական տեսութիւն» (մաս 1, 1904) պատմաբանասիր. աշխ-ների:

ՍԵԴՐԱԿՅԱՆ Դավիթ Միերի (ծ. 1938), ֆիզիկոս-տեսաբան: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1972), պրոֆ. (1975): ՀՀ ԳԱԱ ակադ. (1990, թղթ. անդամ՝ 1982–ից, ՀՀ ԳԱԱ ակադ. քարտուղար՝ 1985–90-ին, փոխնախագահ՝ 1990–94-ին): «Աստղաֆիզիկա» ամսագրի գլխ. խմբ. (2000–ից): Ուսումնասիրել է լիցքավորված մասնիկների դիֆրակցիոն ճառագայթումը: Տվել է ձգող. դաշտը նկարագրող էյնշտեյնյան հավասարումների սակավաթիվ լուծումներից մեկը, ստեղծել երկն. մարմինների տեսություն, որը կիրառել է պտտվող պոլիտրոպ աստղ. մոդելների, սպիտակ թզուկների և բարիոնային աստղերի ֆիզ. բնութագրերի հետազոտման համար: Առաջարկել է նեյտրոնների և պրոտոնների գերհոսելիության հատկության վրա հիմնված մագնիս. դաշտերի առաջացման մեխանիզմ:

ՀԼԿԵՄ մրց. (1970), ՀՀ «Անանիա Շիրակացի» (1999), ԳԱԱ ոսկե (2015) մեդալներ:

ՍԵԴՐԱԿՅԱՆ Լավրենտի Գրիգորի (ծ. 1925), շինարար: Տեխ. գիտ. դ–ր (1971), պրոֆ. (1971): Աշխ-ները վերաբերում են նյութերի դիմադրության վիճակագր. եղանակներով կառուցվածք. նյութերի (բետոն, երկաթբետոն, քար) ձևափոխման հատկությունների ուսումնասիրությանը: Առաջարկել է «իդեալական անհամասեռ» կարծր նյութի մոդել, որի հիման վրա ստեղծել է փխրուն նյութերի դիմադրության վիճակագր. տեսություն:

ՍԵԴՐԱԿՅԱՆ Մարգար Սեդրակի (1907–1973), կոնյակագործ: ՀԽՍՀ վաստ. ճարտարագետ (1961): «Կոնյակի արտադրության բարձր վարպետ» (1961): Սոց. աշխ. հերոս (1971): 1940–73-ին՝ Երևանի կոնյակի գործարանի գլխ. տեխնոլոգ: ԽՍՀՄ-ում՝ տեսակավոր կոնյակների, Հայաստանում՝ կոնյակի արտադր-յան նոր տեխնոլոգիաների հիմնադիրներից: Ստեղծել է «Հոբելյանական» (ԽՍՀՄ-ում առաջին տեսակավորը), «Ընտիր», «Արտաշատ», «Դվին», «Երևան», «Տոնական», «Ախթամար», «40 տարի», «Հայաստան», «50 տարի», «Նաիրի», «Վասպուրական», ուկր. «Օդեսա», «Ուկրաինա» կոնյակները: Ֆրանս. «Քամյու» ֆիրմայի «Համտեսի ասպետ» մեդալ (1967): Երևանի կոնյակի գործարանի տարածքում կառուցվել է Ս–ի հիշատակը հավերժացնող հուշահամալիր (1975):

ՍԵԴՐԱԿՅԱՆ Մկրտիչ Հովհաննեսի (1922–2009), նկարիչ: ՀՀ ժող. նկարիչ (1985): Պրոֆ. (1986): Հեղինակ է պատմ. թեմատիկ պատկերների («1915 թվական», 1960, «Դեր Զոր», 1979, «Արա Գեղեցիկ և Շամիրամ», 2003, ևն), դիմանկարների («Մայրեր», 1970, «Գայանեի դիմանկարը», 2000, ևն), բնանկարների («Բջնի», 1965, «Սևան», 1999, ևն), նատյուրմորտների («Նատյուրմորտ», 1968, ևն):

ՍԵԴՐԱԿՅԱՆ Վարդան Մկրտչի (ծ. 1949), նկարիչ–ձևավորող: 1979-ից՝ Հայֆիլմի բեմադրող-նկարիչ (գեղ.՝ «Արարման ութերորդ օրը», 1980, «Արյուն», 1990, «Լռության սիմֆոնիա», 2001, ևն, վավերագր.՝ «Վավերագրողը», 2003): Հեղինակ է նաև գեղանկարչ. գործերի («Վերածնունդ», «Նամակ», երկուսն էլ՝ կոմպոզիցիա, «Նատյուրմորտ» ևն): ՀՀ Պետ. մրց. (2003):

ՍԵՋ, չայիր, դաշտավելուկազգիների (հացազգիներ) ընտանիքի բույսերի ցեղ: Հայտնի է մոտ 30 տեսակ՝ 2 կիսազնդերի ոչ արևադարձ. գոտիներում, ՀՀ-ում՝ Արագածոտնի, Վայոց ձորի, Սյունիքի և այլ մարզերում: Առավել տարածվածը սողացող Ս. է, կերաբույս է, ցանքերում՝ չարորակ մոլախոտ: Մի քանի տեսակ խաչասերել են ցորենի հետ (ցորենասեզ. հիբրիդներ):

ՍԵՋԱ ՍԻՐԱՆ (Զարիֆյան-Բյուտիկյան Սիրան Տաճատի, 1903–1973), գրող, հրապարակախոս, խմբ.: Մատթեոս *Զարիֆյանի* քույրը: 1932–34 և 1947–68-ին՝ «Երիտասարդ հայուհի» հանդեսի հիմնադիր-խմբ., 1969–75-ին՝ «Երիտասարդ հայ» երկշաբաթաթերթի խմբ.: Հեղինակ է «Պատնէշը» (1959), «Մեղաւորուհին» (1960) պատմվածքների ժող–ների: Լիբանանի Կառ–յան «Արժանյաց կարգ» շքանշան (1967):

ՍԵԶԱՆ (Cezanne) Պոլ (1839–1906), ֆրանսիացի գեղանկարիչ: Պոստիմպրեսիոնիզմի վարպետներից: Նատյուրմորտներում, բնանկարներում, կոմպոզիցիաներում մաքուր գույների աստիճանավորության օգնությամբ ձգտել է բացահայտել ժամանակի ու տարածության մեջ անփոփոխ բնության վեհությունը, կատարելությունը, ձևերի օրգ. միասնությունը, նյութականությունը, առարկայական աշխարհի պլաստիկությունը («Մառնի ափը», 1888, «Դեղձեր և տանձեր», 1888–90, ևն):

ՍԵԹ (Սեթխ, Սութեխ), անապատի աստվածը եգիպտ. դից-յան մեջ, փարավոնների հովանավորը: Ս. սպանել է իր եղբայր *Օսիրիսին*: Պատկերվել է ավանակի գլխով մարդու կերպարանքով:

ՍԵԹՅԱՆ Եփրեմ (1791–1838), բանասեր-պատմաբան, իրավագետ, աստվածաբան: ՎնտՄՄ անդամ (1814): Հեղինակ է «Արիեստ ճարտասանութեան» (1832), «Պատմութիւն Հին և Նոր Կտակարանի» (1832), «Պատմութիւն Հայոց» (1839), «Իրաւագիտութիւն (բնական օրէնք, գրաւական տոհմային եւ ազգային իրաւունք)» (1851) աշխ-ների:

ՍԵԹՅԱՆ Հովհաննես, *Յոսեյ Վանանդնսեի* (1853–1930), բանաստեղծ, արձակագիր: 1896-ի հայկ. կոտորածներից հետո հաստատվել է Կահիրեում: Հեղինակ է «Գրական զբօսանք» (1882), «Յուզման ժամեր» (1888), «Տարագրին քնարը» (1912) բանաստեղծությունների, «Արշալոյսէն վերջալոյս» (1912) արձակ գործերի ժող-ների:

ՍԵԹՈՆ ԹՈՄՓՍՈՆ (Seton Thompson) Էռնեստ (1860–1946), կանադացի գրող, նկարիչ–անիմալիստ: Գրել է անգլ.: Հեղինակ է «Այն մարդկանց կյանքը, որոնց հետապնդում են» (1901), «Գիրք անտառի մասին» (1912), «Վայրի կենդանիների կյանքը» (1925–27) պատմվածքների ժող-ների, որտեղ գիտ. ճշգրտությունը զուգորդված է հետաքրքրաշարժ շարադրանքով: Պատկերազարդել է իր ստեղծագործությունները: Հայ. հրատարակվել է Ս. Թ–ի «Պատմվածքներ կենդանիների մասին» (1973) ժող–ը:

ՍԵԼԱ (Cela) Կամիլո Խոսե (1916–2002), իսպանացի գրող: Իսպանիայի թագավոր. ԳԱ ակադ. (1957): «Դուարտե Պասկուալի ընտանիքը» (1942), «Փեթակ» (1951) վեպերում պատկերել է կյանքի անհուսալիությունն ու անհեթեթությունը: Հեղինակ է նաև ժողդ-ի կյանքը պատկերող «Ուղևորություն դեպի Ալկարիա» (1948) ակնարկների, «Իսպանական պատմություններ: Կույրերն ու հիմարները» (1957) գրոտեսկ. պատմվածքների ժող-ների, «Մազուրկա երկու հանգուցյալի համար», «Շիմշատի Մաղեյրա» (1999) վեպերի: Նոբելյան մրց. (1984):

ՍԵԼԱՎ, լեռն. գետերի հուներում հանկարծակի առաջացած ցեխ. և ցեխաքար. հոսքեր: Ս. առաջանում է երկարատև տեղատարափ անձրևների, սառցադաշտերի ու ձնածածկույթի արագ հալքի հետևանքով: Բնորոշ է լեռն. երկրներին: ՀՀ-ում սելավ. ավազանները զգալի տարածում ունեն: Իր կործանարար ազդեցությամբ

հայտնի է Գետառի (Երևանի) 1946–ի Ս.: Ս–ի դեմ պայքարի հիմն. միջոցներն են՝ հողաբուս. ծածկույթի ամրացումը, լանջերի անտառապատումը, գետահունների կարգավորումն ու ամբարտակումը ևն:

ՍԵԼԵԶՆՅՈՎ, Գենադի Նիկոլաևիչ (ծ. 1947), ռուս հաս–քաղ. գործիչ: 1996–2003–ին՝ ՌԴ Պետ. դումայի դաշն. ժողովի նախագահ: 1980–88–ին՝ «Կոմսոմոլսկայա պրավդա», 1990–93–ին՝ «Պրավդա» և այլ պարբ–ների գլխ. խմբ.:

ՍԵԼԵԿՑԻԱ, ընտրասերում, 1. գիտ–յուն գղտ. բույսերի սորտերի ու հիբրիդների և գղտ. կենդանիների ցեղերի ստեղծման մասին: 2. Գղտ. արտադր–յան ճյուղ, որն զբաղվում է գղտ. բույսերի սորտերի ու հիբրիդների ստեղծմամբ և կենդանիների ցեղերի բուծմամբ: Ս–ի տես. հիմքը ծագումնաբանությունն է, ձևավորվել է բույսերի մշակության և կենդանիների ընտելացման հետ միաժամանակ: Հազարամյակներ առաջ զարգացել է պարզունակ Ս.: Երկրագործության և անասնապահության զարգացմանը զուգընթաց արհեստ. ընտրությունը դարձել է զանգված., և ձևավորվել է ժող. Ս., իսկ հետագայում նաև արդ. Ս.: Ժամանակակից Ս–ում կիրառում են հիմնականում ընտրության, խաչասերման, մուտագենեզի, ինցուխտի, պոլիպլոիդիայի ևն մեթոդներ:

Հայաստանում Ս. ձևավորվել է դեռևս հնագույն ժամանակներից. բույսերի մշակմանը և կենդանիների ընտելացմանը զուգընթաց ընտրել և բազմացրել են առավել արժեքավորները, և ուրարտ. շրջանում արդեն հայտնի են եղել ժամանակակից գղտ. կենդանիների բազմաթիվ ցեղեր և բույսերի սորտեր: Հետագայում ժող. Ս–ի միջոցով ստեղծվել են ոչխարների մազեխ, բալբաս, Ղարաբաղի, կարամանյան, այծերի՝ Կիլիկիայի, ձիերի՝ Ղարաբաղի, Կիլիկիայի ցեղերը, տավարի, հավերի ցեղերի բազմաթիվ ձևեր:

Հայաստանը նաև բույսերի հարուստ բազմազանության ընօրրան է, մի շարք տեսակների (ցորենի, պտղատու ծառերի, խաղողի) ձևագոյացման կենտրոն: Ժող. Ս. ստեղծել է գղտ. գրեթե բոլոր բույսերի տեղ. արժեքավոր սորտեր, որոնք հարմարված են Հայկ. լ–աշխարհի բնական տարբեր գոտիների հողակլիմ. պայմաններին: Պտղատու տեսակների և խաղողի հինավուրց սորտերից շատերը ցայսօր մշակվում են ՀՀ–ում: Ս. գիտ. հիմունքներով կազմավորվելուց հետո ստացվել են ցորենի և տեղ. եգիպտացորենի սորտեր: Պտղատու և հատապտղատու տեսակներից ստեղծվել և գղտ. տարբեր գոտիներում շրջանացվել են ծիրանենու և դեղձենու (Մ. Սանահյան, Է. Մորիկյան, Հ. Օհանյան), տանձենու (Պ. Կարանյան), սերկևիլենու (Է. Բեկետովսկայա), ելակի (Ս. Ազուլյան) և այլ սորտեր:

Խաղողապտղագինեգործության գիտ. կենտրոնի գիտնականները ստացել են խաղողի բազմաթիվ սորտեր (Պ. Այվազյան, Ս. Պողոսյան, Մ. Մելքոնյան, Կ. Պողոսյան, Ս. Խաչատրյան, Է. Մարտիրոսյան, Վ. Եղիազարյան, Վ. Սարգսյան, Է. Ազիզյան, Շ. Մկրտչյան, Ե. Երգեսյան և ուր.):

Բանջարաբոստան. և տեխ. մշակաբույսերի գիտ. կենտրոնի և ՀԳԱ բուսաբուծության ամբիոնի գիտնականներն ստեղծել և արտադր–յան մեջ են ներդրել լոլիկի, սմբուկի, տաքդեղի, վարունգի, կաղամբի, սեխի, ձմերուկի մի շարք սորտեր (Ա. Անանյան, Հ. Վարոսյան, Ն. Ավետիքյան և ուր.):

ՀՀ անասնաբուծության և անասնաբուժության գիտ. կենտրոնում ստեղծել են ***կովկասյան գորշ տավարի*** (Ն. Ստեփանյան, Ն. Գուլամիրյան, Հ. Մկրտչյան, Շ. Ժամկոչյան), ***սովետական մառդեր*** ճագարների (Մ. Բագրատյան), երևանյան հավերի ցեղը (Ս. Կարապետյանի ղեկավարությամբ), ***հայկական կիսակոպտաբուրդ ոչխարի*** (Ա. Ռուխկյանի ղեկավարությամբ) ցեղերը ևն, արագածյան ոչխարների ցեղախումբ և բազմաթիվ ներցեղ. տիպեր:

ՍԵԼԵՆ (Selenium), Se, տարրերի պարբեր. համակարգի VI խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 34, ա. զ.՝ 78,96: Անվանումը՝ հուն. Selene – Լուսին բառից: Ս. հալկոգեն է, պատկանում է հազվագյուտ և ցրված տարրերի շարքին: Առաջացնում է բյուրեղ. և ամորֆ ալոտրոպ. ձևափոխություններ: Ամենակայունը մուգ մոխրագույն ձևափոխությունն է, խտ.՝ 4,807 $գ/սմ^3$, $t_{հալ.}$՝ 221°C: Ս. կիսահաղորդիչ է՝ օժտված լուսաէլ. հատկություններով: Ս–ային լուսատարրերն օգտագործվում են, օր., լուսաէլ. լուսակայացույցներում: Ս–ի բոլոր միացությունները թունավոր են:

ՍԵԼԵՆԱ, լուսնի աստվածուհին հուն. դիցյան մեջ, նույնացվում է ***Արտեմիսի*** հետ:

ՍԵԼԵՆԱՋՐԱԾԻՆ, H_2Se, ***սելենի*** միացությունը ջրածնի հետ. տհաճ հոտով, ջրում լուծելի, խիստ թունավոր գազ է, $t_{հալ.}$՝ –65,72°C, $t_{եռ.}$՝ –41,5°C: Ստացվում է սելենիդների և թթուների փոխազդեցությամբ: Ս–ի ջր. լուծույթը սելենաջրածնական թթուն է: Խիստ թունավոր է:

ՍԵԼԵՆԳԱ, գետ Մոնղոլիայում և ՌԴ Բուրյաթիայում: Երկ.՝ 1024 *կմ*, ավազանը՝ 447 հզ. $կմ^2$, ջրի միջին ծախսը՝ 900 $մ^3/վ$–ից ավելի: Առաջանում է Իդեր ու Մուրեն գետերի միախառնումից և թափվում Բայկալ լիճը՝ առաջացնելով դելտա: Հիմն. վտակներն են Էգին Գոլը, Օրխոնը, Խիլոկոնը, Ուդան: Նավարկելի է մինչև Սուխե Բատորը (Մոնղոլիա): Ս–ի ափին է Ուլան Ուդեն:

ՍԵԼԵՆԻ ՕՔՍԻԴՆԵՐ, ***սելենի*** միացությունները թթվածնի հետ՝ SeO_2, SeO_3, Se_2O_3: Բյուրեղ. նյութեր են, լուծվում են ջրում՝ առաջացնելով թթուներ: SeO_2–ն օգտագործում են լուսակիրներ ստանալու համար, SeO_3–ը՝ օքսիդիչ, և սելենացնող ագենտ է օրգ. սինթեզում:

ՍԵԼԵՆԻԴՆԵՐ, ***սելենի*** միացությունները մետաղների հետ: Բյուրեղ. նյութեր են: Կիսահաղորդիչ են, լուսադիմադրությունների և լուսատարրերում ($CdSe$, Sb_2Se_3) օժտված լուսազգայունությամբ, լազեր. նյութեր ($ZnSe$, $CdSe$, $GaSe$, $PbSe$), պինդ քսայուղեր և կատալիզորդներ ($MoSe_2$, WSe_2, $NbSe_2$):

«ՍԵԼԵՍՏԻՆԱ» («Ողբերգականակերգություն Կալիստոյի և Մելիբեի մասին»), իսպ. վեպ–դրամա: 1492–97–ին գրել է Ֆ. դը Ռոխասը (1465–1541): Իսպ. վաղ Վերածննդի հուշարձաններից է, որտեղ միջնադար. գրկ–յան բարոյաուսուցող. ավանդույթները միահյուսված են իտալ. հումանիզմի գաղափարներին: Մեծ ազդեցություն է թողել իսպ. «ոսկեդարի» դրամայի զարգացման վրա (Լոպե դե Վեգա, Տիրսո դե Մոլինա):

ՍԵԼԵՎԿԻԱ, ***Սելևկոս I Նիկատորի*** հիմնադրած կամ նրա անունով կոչված մի շարք քաղաքների անվանումը: 1. Տիգրիսի Ս. (այժմյան Բաղդադից հվ) հիմնադրվել է մ. թ. ա. 312–ին՝ որպես Սելևկյանների մայրաքաղաք: Մ. թ. 164 կամ 165–ին ավերել է հռոմեացի զորավար Ավիդիոս Կասսիոսը: 2. Պիեռիայի Ս. հիմնադրվել է մ. թ. ա. մոտ 300–ին: Ավագն Անտիոքի նվինգստ–ն էր (Ասորիքի ք–ներից միակը, որը չի մտել ***Տիգրան Բ***–ի տերության մեջ): V–VI դդ–ում անկում է ապրել: 3. Ք.ք Կիլիկիայի Իսավրիա նահանգ–ում՝ Կալիկանդոս գետի աջափնյակում: Հիմն. բնակիչները եղել են հույները, X–XI դդ–ից՝ հայերը: XI դ–ի կեսին Թորոս Բ–ն վերակառուցել է և դարձրել ռազմ. կարևոր հենակետ: Հին Ս–ի ավերակներից ոչ հեռու հետազայում հիմնադրվել է Ս. ավանը (Զիլիֆկե կամ Սիլիֆկե), որտեղ XX դ–ի սկզբին բնակվել է շուրջ 2 հզ. հայ: Վերջիններս տեղահանվել են 1915–ին:

ՍԵԼԵՎԿՅԱՆՆԵՐ, Սելևկյանների պետությունում տիրապետող հարստություն և պետություն մ. թ. ա. 314–64–ին: Հիմնադրել է Ալեքսանդր Մակեդոնացու զորավար ***Սելևկոս I Նիկատորը***: Մ. թ. ա. 84/83–ին Ս–ի պետությունը գրավել է ***Տիգրան Բ Մեծը***, 64–ին հռոմեացի զորավար Պոմպեոսը վերացրել է Ս–ի թագավորությունը:

ՍԵԼԵՎԿՈՍ I ՆԻԿԱՏՈՐ (մ. թ. ա. մոտ 358–281/280), ***Սելևկյանների*** հարստության և պետության հիմնադիրը: 305–ին իրեն հռչակել է թագավոր: ***Ալեքսանդր Մակեդոնացու*** մահից հետո ի կառավարումն ստացել է (321–ին) Բաբելոն սատրապությունը: Իշխանության համար ***դիադոքոսների*** միջև պայքարում իր տիրապետությանն է միացրել Մարաստանը, Սուզիանեն, Պարսքը, այնուհետև Բակտրիան և այլ երկրներ: 281–ին զավթել է գրեթե ողջ Փոքր Ասիան: Սպանվել է Մակեդոնիայի թագավոր Պտղոմեոս Կերավնոսի դեմ կռվում:

ՍԵԼԻՄ I Յավուզ (Ահեղ, Selim I Yavuz, 1467/68 կամ 1470–1520), թուրք սուլթան՝ 1512–ից: Հաղթել է Իրանի Իսմայիլ շահին, գրավել Հայաստանը, Միջագետքը, Եգիպտոսը, Արաբիան և Այժիրը: Օսմ. պետությունը վերածել է կայսրության:

ՍԵԼԻՄ III (Selim III, 1761–1808), թուրք սուլթան՝ 1789–1807–ին: Բանակում, հոդատիրության, ֆին., վարչ. կառավարման մարզերում վերափոխումներ կատարելով՝ փորձել է ամրապնդել կենտր. իշխանությունը և կանխել Օսմ. կայսրության անկումը: Սպանվել է ենիչերիների խռովության հետևանքով:

ՍԵԼԻՄԻ ԿԱՐԱՎԱՆԱՏՈՒՆ, **Սուլեմայի կարավանատուն**, Գեղարքունիք գվռ–ը Վայոց ձորին կապող ճանապարհին՝ Վարդենյաց (նախկին՝ Սելիմի) լ–անցքի հվ. լանջին: Կառուցել է Չեսար Օրբելյան իշխանը 1332–ին: Եռանավ դահլիճ էր՝ ծածկված գլանաձև թաղերի համակարգով, դահլիճի անկյունում միակտուր քարից ջրավազանն էր:

ՍԵԼԻՆ (Céline) Լուի–Ֆերդինանդ (1894–1961), ֆրանսիացի գրող: Հեղինակ է «Ճանապարհորդություն գիշերից անդին» (1932, հայ.՝ 2015), «Մահ և պարտք» (1936) վեպերի, հակակոմ. “Mea Culpa” (լատ.՝ «Իմ մեղքը», 1936), հակասեմիտ. և այլ պամֆլետների, որտեղ քարոզել է ազգայնականություն, ուժի պաշտամունք, «Խամաճիկներ» (1944), «Հեքիաթային տեսարան մի այլ իրադարձության համար» (1952), «Հյուսիս» (1954, հրտ.՝ 1960)

վեպերի, «Ամրոցից ամրոց» (1957) ինքնակենսագր. ժամանակագրության:

ՍԵԼԻՆՋԵՐ (Salinger) Ջերոմ Դեվիդ (1919–2010), ամերիկացի գրող: Հեղինակ է «Ինը պատմվածք» (1959) ժող–ի, «Փրկիչը տարեկանի արտում» (1951, հայ.՝ 2013) վիպակի, Գլասների գերդաստանի մասին [«Ֆրենին ու Զուին» (1961), «Ծպեղները բարձր, ատաղձագործներ» (1969) ևնվ վիպակաշարի: Ս–ի արձակն առանձնանում է քնարականությամբ, երաժշտականությամբ, ձևն–բուդդայականության փիլ–յան տարրերով: Հայ. հրատարակվել են նաև «…Եվ այդ շուրթերը, աչքերը կանաչ» (1962) պատմվածքների, «Վիպակներ: Պատմվածքներ» (1978) ժող–ները:

ՍԵԼԻՇՆԵՐ, **սալիշներ**, ինդկացի. ժողդ–ների խումբ Կանադայի հվ–արմ–ում և ԱՄՆ–ի հս–արմ–ում: Թվաքանակը՝ մոտ 40 հզ. (2010): Լեզուն՝ սալիշերեն: Հավատացյալները կաթոլիկ են և բողոքական:

ՍԵԼԻՇՉԵՎ, Աֆանասի Մատվեևիչ (1886–1942), ռուս. լեզվաբան, սլավոնագետ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1929): Լեզվաբ. բալկանագիտ–յան հիմնադիրներից: «Սլավոնական լեզուների համեմատական քերականության ներածություն» (մաս 1, 1914), «Հին սլավոներեն» (մաս 1–2, 1951–52) և այլ աշխ–ների: 1934–37–ին անհիմն բռնադատվել է:

ՍԵԼԼԻՎԵՆ (Sallivan) Արթուր (1842–1900), անգլիացի կոմպոզիտոր, երգեհոնահար, դիրիժոր: Ճանաչվել է օպերետներով («Մի կաղդ», 1885): Հեղինակ է նաև օպերաների, բալետների, օրատորիաների, սիմֆոնիայի (1866), երգերի, պաշտամունք. և այլ երկերի:

ՍԵԼԼԻՎԵՆ Լուիս (1856–1924), ամերիկացի ճարտ., ճարտ–յան տեսաբան: Զարգացրել է բարձրահարկ շենքերի տիպն ու կառուցվածքը («Գարանտի Բիլդինգ» երկնաքերը Բուֆալոյում, 1894–96, հանրախանութ՝ Չիկագոյում, 1899–1900): Ֆունկցիոնալիզմի և օրգ. ճարտ–յան մեջ նրա առաջադրած սկզբունքները դարձել են մոդեռնիզմի հիմքը:

ՍԵԼԼԻՎԵՆ Հարրի Սթեք (1892–1949), ամերիկացի հոգեբան, նեոֆրեյդիզմի հիմնադիրներից: Զարգացրել է ուսմունք միջանձնային հարաբերությունների մասին, որտեղ անհատը ներկայացված է որպես աղավաղված կամ երևակայական կերպարների («անձավորում») հանրագումար, որն ի հայտ է եկել սոցիալ. շփման ընթացքում:

ՍԵԼԿՈՒՊՆԵՐ, սամոդյան ժողդ ՌԴ–ում: Թվաքանակը՝ 4,2 հզ. (2002), Տյումենի մարզում՝ 1,9 հզ. (հիմնականում՝ Յամալո–Նենեց. ԻՄ–ում՝ 1,8 հզ.), Տոմսկի մարզում՝ 1,8 հզ., Կրասնոյարսկի երկրամասում՝ 0,4 հզ.: Լեզուն՝ սելկուպերեն: Հավատացյալներն ուղղափառ են:

ՍԵԼՅԱՆԻՆՈՎ, Գեորգի Տիմոֆեևիչ (1887–1966), ռուս. կլիմայագետ, ագրո– և միկրոկլիմայագիտ–յան գիտ. դպրոցի հիմնադիրը: Հիմնավորել է ԽՍՀՄ–ում մերձարևադարձ. մշակաբույսերի տեղաբաշխումը: Կազմել է համաշխ. ագրոկլիմ. տեղեկատու (1937):

ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ԹՈՒՐՔԵՐ, օղուզ թուրքերի ցեղերից. հաստատվել էին Սիրդարիայի միջին հոսանքի, Կարադաուի (Կարատաու) նախալեռն. շրջաններում: Անվանադիրն օղուզ. քընըք (կընըկ) ցեղի առաջնորդներից Սելջուկն էր, որի թոռները՝ Տուղրիլ և Չակիր բեկերը, նվաճած տարածքները հոչակել են (1040) Ս. թ–ի պետություն: 1042–ից մինչև XI դ–ի վերջը Ս. թ. գրավել են Իրանը, Ատրպատականը, Իրաքը, Պաղեստինը, Ասորիքը, Փոքր Ասիայի զգալի մասը և այլ տարածքներ, 1047/48–1072–ին՝ Հայաստանը: 1055–ին Բաղդադի խալիֆը Տուղրիլին հռչակել է սուլթան: 1040–ական թթ–ից Ս. թ–ի տերությունը տրոհվել է ինքնուրույն սուլթանությունների: Մինչև 1307–ը գոյատևել է *Իկոնիայի սուլթանությունը*:

ՍԵԼՎԻՆԱՋՅԱՆ Բյուզանդ Սահրատի (1937–2009), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1987), պրոֆ. (2008): Աշխ–ները վերաբերում են Հայաստանի ընդերքի երկրաբանատնտ. գնահատման և ընդերքի պաշարի ներուժի արդյունավետ օգտագործման հարցերին:

ՍԵԼՎԻՆՍԿԻ Իլյա (Կառլ) Լվովիչ (1899–1968), ռուս գրող: Հեղինակ է բանաստեղծությունների, «Ուլյալաևշչինա» (1927) և այլ պոեմների, նաև «Բանակի հրամանատար 2» (1928) չափածո ողբերգության, «Պուշտորգ» (1928) չափածո վեպի, «Ռուսաստան» (1944–57) եռերգության և պատմ. չափածո այլ ողբերգությունների, «Բանաստեղծության արվեստանոց» (1962) գրքի: Թարգմանել է հայ բանաստեղծների գործերից:

ՍԵԽ (Cucumis melo), դդմազգիների ընտանիքի Cucumis ցեղի բանջարաբույս: Հայրենիքը Կենտր. և Փոքր Ասիան է: Ուտելի պտուղները պարունակում են շաքարներ, C վիտամին, կարոտին, պեկտիններ: Աշակում են բոլոր մայրցամաքներում, առավել հայտնի են Միջին Ասիայի Ս–երը: ՀՀ–ում մշակում են Շալախ, Մսեյվազ, Մասիս 2, Կարմիր Ս. և այլ սորտեր: Բերքատվությունը՝ 120–150 *գ/հա*:

ՍԵԽԱԴՈՒՄ, **պատիսոն**, դդմազգիների ընտանիքի դդում ցեղի միամյա բանջարաբույս (դդումի տարատեսակ): Աշակվում է բոլոր աշխարհամասերում: Բերքավտությունը՝ 150 *գ/հա*:

ՍԵԽԱԾԱՌ (Carica papaya L.), **պապայա, հնդկասեխ**, հնդկասեխազգիների ընտանիքի պտղատու ծառ: Աշակում են արևադարձներում: Պտուղներն իրենց ձևով նման են սեխին, օգտագործում են սննդի մեջ: Նրանց կաթնահյութից ստանում են պապային ֆերմենտը:

ՍԵԿԱՆՍ (լատ.՝ secans – հատող), եռանկյունաչափ. ֆունկցիաներից, նշանը՝ Sec, $\sec\alpha = 1/\cos\alpha$:

ՍԵԿԵՇՖԵՀԵՐՎԱՐ (Székesfehérvár), ք. Հունգարիայում, Ֆեյեր մեդիեի վարչ. կենտրոնը: Բն.՝ 105 հզ. (2010): Հայտնի է 1009–ից: 1038–1526–ին Ս–ում թագադրել են Հունգարիայի թագավորներին: Կան ռոման. եկեղեցու ավերակներ (XI դ.), գոթ. մատուռ (XV դ.), բարոկկո ոճի տաճար (XVIII դ.), կլասիցիզմի ոճի Եպիսկոպոսի պալատը, Սարզային խորհրդի տունը (XIX դ–ի սկիզբ): Ունի պատկերասրահ:

ՍԵԿԵՐ, հունգարների ազգագր. խումբ Տրանսիլվանիայում (Ռումինիա): Թվաքանակը՝ մինչև 1 մլն (2010):

ՍԵԿԿԻ (Secchi) Անջելո (1818–1878), իտալացի աստղագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1877): Աստղերի սպեկտրների 1–ին դասակարգման (1863) հեղինակը:

ՍԵԿՈՅԱՆ Անահիտ (Աննա) Վաղարշակի (1922–1994), արձակագիր: Հեղինակ է «Նովելներ» (1951) ժող–ի, «Ոսկե վազերի մեջ» (1958), «Գարունը ձյան տակ» (1964), «Եթե Որոտանը խոսեր» (1970), «Հյուսիսային պողոտա» (1981) վեպերի, «Ատամնաբույժ Գրիգորը» (1973) մանկ. պատմվածքների ժող–ի:

ՍԵԿՈՅԱՆ Էդուարդ Սեթի (ծ. 1942), դեղաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1979), պրոֆ. (1986): Աշխ–ները վերաբերում են ֆիզիոլոգիայի, նյարդաքիմիայի, դեղաբանության, կենսաֆիզիկայի, լազեր. բժշկության և բժշկ. վերականգնման խնդիրներին:

Հոմեոպաթիայի միջազգ. (հայ–շվեյցար.) ակադ–ի նախագահ (2003–ից), ՌԲՏԳԱ անդամ (2003):

ՍԵԿՈՅԱՆ Վազրիկ Մեխակի (1909–1993), հաս–քաղ. գործիչ, ջրաշինարար: 1952–54–ին՝ Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ, 1965–73–ին՝ ՀԽՍՀ շինանյութերի արդ–յան նախարար:

ՍԵԿՈՆԴԻ–ՏԱԿՈՐԱԴԻ (Sekondi – Takoradi), ք. Գանայում, Արմ. մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 430 հզ. (2010): Նվինգատ՝ Գվինեայի ծոցում: Առևտր. խոշոր կենտրոն է:


ՍԵԿՏՈՐ (լատ.՝ sector, < seco – կտրել, բաժանել), 1. (աշխարհագր.) ցամաքի խոշոր, աշխարհագր. գոտիավորման տարբեր կառուցվածքներով մասեր (օր.՝ արմ., մերձօվկիանոս., ներմայրցամաք. ևն): 2. (Մաթ.) շրջանի՝ 2 շառավիղներով և նրանց միջև ընկած աղեղով սահմանափակված հատվածը: Մակերեսը՝ $S = 1/2\alpha r^2$, որտեղ r–ը շրջանի շառավիղն է, α–ն՝ Ս. սահմանազատող շառավիղների կազմած անկյունը (*ռադ*–երով):

ՍԵԿՐԵՏԻՆ, մարդու և ողնաշարավոր կենդանիների հորմոն. արտադրվում է բարակ աղիի վերին հատվածի լորձաթաղանթում: Խթանում է ենթաստամոքս. գեղձի հյութազատությանը:

ՍԵԿՈՒՅՐԻՆԵԳՆ, իշակաթնուկազգիների ընտանիքի թփերի կամ ոչ մեծ ծառերի ցեղ: Հայտնի է 20 տեսակ՝ Միջերկրածովայքում, Ասիայի, Աֆրիկայի, Հվ. Ամերիկայի բարեխառն ու մերձարևադարձ. մարզերում: Դեղաբույս է (արմատները և մատղաշ ցողունները պարունակում են սեկուրինն ալկալոիդը):

ՍԵՂԱՆ, 1. սուրբ և սրբարար պատարագամատույց. քառանկյուն շինվածք, որի վրա կատարվում է Հիսուս Քրիստոսի հավիտեն. Պատարագի խորհուրդը: Էջմիածնի Մայր տաճարը, բացի հիմն. Ս–ից, օժտված է նաև Իջման Սբ Ս–ով (խորհրդանշում է Հիսուսի՝ Գրիգոր Ա Լուսավորչի տեսիլքով ցույց տրված իջման տեղը): 2. Ս–ներ են կոչվել նաև Հին ուխտի զոհասեղանները: Ս. զետեղել են մատուռների, եկեղեցիների, տաճարների խորաններում, նրա վրա կատարել Սբ *Հաղորդության* խորհուրդը:

ՍԵՂԱՆ, ուռուցիկ քառանկյուն, որի 2 հակադիր կողմերը՝ հիմքերը, զուգահեռ են միմյանց (նկ., AD և BC), իսկ մյուս 2–ը (սրունքներ)՝ ոչ: Հիմքերի միջև հեռ–յունը կոչվում է Ս–ի բարձր–յուն (MN): Լինում են հավասարասրուն (երբ սրունքներն իրար հավասար են) և ուղղանկյուն (երբ սրունքներից մեկն ուղղահայաց է հիմքերին) Ս–ներ: Ս–ի մակերեսը հավասար է հիմքերի կիսագումարի և բարձր–յան արտադրյալին՝



$$S = \frac{AD + BC}{2} \cdot MN:$$

ՍԵՂԱՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, արքունի գործակալություն Կիլիկյան Հայաստանում: Համապատասխանում է Արշակունյաց ժամանակաշրջանի ***հազարապետութ–***

յանը: Գործակալը հսկել է արքուն. եկա-մուտներն ու ծախսերը, վարել տնտ-յունը: Նրան են ենթարկվել *ջամբռյան* և պա-լատ. այլ աստիճանավորներ:

ՍԵՂԱՆԱՄԱՐ, լ-գագաթ Կոտայքի մար-զում, Գեղամա լեռների կենտր. մասում: Բարձր.՝ 3219 *մ*:

ՍԵՂԱՆԱՎՈՐ, **սարաֆ**, XVI–XIX դդ-ի հայ մեծահարուստ վաշխառուական խավ Օսմ. կայսրությունում: Հիմնականում չելեբիներ (տես *Չելեբիություն*) և *ամի-րաններ* էին, որոնք կատարել են հարկեր հավաքելու և պետ. գանձարան մուծելու գործառույթն:

ՍԵՂԱՆԱՏՈՒՆ, ճաշկերույթի համար նա-խատեսված դահլիճ կամ առանձին շենք: Հայաստանում կառուցվել են ուրարտ. շրջանից: Վաղ միջնադարից պահպան-վել են Զվարթնոցի կաթողիկոս. պալատի սեղանատան ավերակները: X–XIII դդ-ում վանքերի Ս-երն առանձին շենքեր էին՝ ուղղանկյուն թաղածածկ դահլիճներ, երբեմն՝ զույգ խաչվող կամարների հա-մակարգով երդիկավոր վեղարածածկ շինություններ: XVII–XVIII դդ-ում Ս-երը եղել են վանքի ներսում (Տաթև, Գանձա-սար, Էջմիածին ևն):

ՍԵՂԱՆԻ ԲԱՆԱՁԵՎ, որոշակի ինտեգ-րալների մոտավոր հաշվման բանաձև, որն ունի հետևյալ տեսքը՝

$$\int_a^b f(x)dx = h\left[\frac{f_0 + f_n}{2} + \sum_{k=1}^{n-1} f_k\right],$$

որտեղ $h = (b - a) / n$, $f_k = f(a+kh)$, $k = 0,1..., n$:

ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍ, մարզախաղ փայտե սեղանի վրա՝ փոքրիկ ցելուլոիդե գնդա-կով և փայտե ռետինապատ թևակնե-րով: Ս. թ–ի միջազգ. ֆեդերացիան (ITTF, հիմն.՝ 1926) միավորում է 200 երկիր (2010): Աշխարհի առաջնություններ անց-կացվում են 1926–ից, Եվրոպայինը՝ 1958–ից, օլիմպ. խաղերի ծրագրում է 1988–ից:

ՍԵՂՄԱՆ, **սֆինկտեր** (հուն.՝ sphincter, sphingo – սեղմել), շրջանաձև մկաններ, որոնք սեղմում կամ կծկման ժամանակ փակում են արտաքին (օր.՝ բերանի) կամ անցումային (օր.՝ միզապարկից դեպի միզուկ) բացվածքները:

ՍԵՂՄԻՐԱՆ, **կորսետ** (ֆրանս.՝ corset), 1. կրծքավանդակի ստորին մասը և որովայնը պիրկ գրկող հատուկ գոտի՝ կազմվածքին վայելուչ տեսք տալու հա-մար: 2. Օրթոպեդիկ սարք, որն օգտա-գործվում է ողնաշարի հիվանդություննե-րի, ձևախախտումների և վնասվածքների ժամանակ:

ՍԵՂՄՄԱՆ ԱՍՏԻՃԱՆ, նաշ-ի գլանի ամ-բողջ ծավալի հարաբերությունն այրման խցի ծավալին: Դիզել. շարժիչների Ս. ա. 12–20 է, կարբյուրատորային շարժիչներինը՝ 5–10: Ս. ա-ի բարձրացումը (մինչև որոշա-կի սահման) մեծացնում է շարժիչի օգգ-ն:

ՍԵՄ (երբ.՝ Sem – անուն, փառք), ըստ Հին կտակարանի՝ *Նոյի* ավագ որդին, սեմա-կան լեզուներով խոսող մի շարք ցեղերի ու ժողդ-ների (Էլամի, Միրիայի ժողդ-ներ, հրեաներ ևն) նախնին:

ՍԵՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ամբողջ. գիտա-կարգ սեմալեզու ժողդ-ների լեզվի, գրկ-յան, մշակույթի և պատմության վերա-բերյալ: Ներառում է ասուրագիտ-յունը, արաբագիտ-յունը, երբայագիտ-յունը ևն:

ՍԵՄԱՆՈՎԱ Լյուդմիլա Վիկտորովնա (1928–2002), բալետի ռուս. արտիստուհի: ՀՀ ժող. արտիստ (1963): Ֆրունզե *Ելան-յանի* կինը: 1947–ից՝ ԵՕԲԹ-ի մենապա-րուհի (Գայանե՝ Ա. Խաչատրյանի «Գայա-նե», Ռուզան՝ Գ. Եղիազարյանի «Սևան», Մարմար՝ Է. Հովհաննիսյանի «Մարմար», Չմշկիկ՝ «Խանդութ»՝ ըստ Ա. Սպենդիար-յանի երաժշտության, Օդետա–Օդիլիա՝ Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճը», Ժիզել՝ Ա. Ադանի «Ժիզել», Մոխրոտ՝ Ս. Ս. Պրո-կոֆևի «Մոխրոտը», Կիտրի՝ Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ», ևն):

ՍԵՄԱՇԿՈ Նիկոլայ Ալեքսանդրովիչ (1874–1949), ռուս. բժիշկ: ՌԲԴԱ (1944) և ՄԳԱ (1945) ակադ.: ՌԽՖՍՀ առող-ջապ-յան առաջին ժողկոմը (1918–30): 1927–36–ին՝ Բժշկ. մեծ հանրագիտարանի գլխ. խմբ.: Լենինի, ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշաններ:

ՍԵՄԱՍԱՐ, լ-գագաթ ՀՀ Վայոց ձորի մար-զում՝ Թեքասարի լ-ների հս-արլ. մասում՝ Արփա գետի վերնագավառում, Գետիկ-վանք գ–ից 7 *կմ* հս-արլ.: Բարձր.՝ 3379 *մ*:

ՍԵՄԱՔ (Semard) Պիեռ (1887–1942), Ֆրան-սիայի 1924–30-ի կոմկուսի գլխ. քարտու-ղար: 1939-ին ձերբակալվել է. հանձնվել «*Վիշի*»-ի իշխանություններին և մահա-պատժի ենթարկվել:

ՍԵՄԱՐԱՆԳ (Semarang), ք. Ինդոնեզիա-յում, Կենտր. Ճավա պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,28 մլն, ագլոմերացիա-յում՝ 1,6 մլն–ից ավելի (2010): Նվինգստ է: Ունի օդանավակայան: Ֆիննանսաբանկ., առևտր. և զբոսաշրջության կենտրոն է:

ՍԵՄԱ–ՔԱՄՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, **աֆրա-սիական լեզուներ**, լեզվաընտանիք: Բաժանվում են 5 ճյուղի՝ սեմ., եգիպտ., բերբերա–լիբիական, քուշական և չա-դական: Տարածված են Հս. Աֆրիկայում և Հվ–արմ. Ասիայում:

ՍԵՄԲԵՆ (Sembène) Ուսման (1923–2007), սենեգալցի գրող, կինոռեժիսոր: Աֆրի-կայի կինոարվ–ի հիմնադիրներից: Գրել է ֆրանս. և վոլոֆով: Հեղինակ է «Սև դո-կեր» (1956), «Տեր Ատծու եղեգնիկները» (1960), «Խարմաթան՝ տաք քամի» (1964), «Կարժահաց» (1973), «Կայսրությունից վերջինը» (1981), «Մանդատ» (1996) վեպե-րի: Նկարահանել է «Սևամորթ կինը....» (1966, ազգ. առաջին լիամետրաժ կինո-նկարը), «Ավազ որդին» (1970), «Էմիտայ» (1971), «Սեղդո» (1977) կինոնկարները:

ՍԵՄԵՆՈՎԿՈՎ Վասիլի Ալեքսանդրովիչ (1831–1898), ռուս մետաղագետ: Առաջինն է իրականացրել (1866) պղնձային շտեյնի բեսեմերացումը՝ այն սևապղնձի վերա-փոխելու համար:

ՍԵՄԵՐՃՅԱՆ Մնացական, **Զեյթունցի** (1840–1914), հաս–քաղ. գործիչ, գրող: Մասնակցել է 1862–ի Զեյթունի ապստամ-բությանը, Կ. Պոլսում հանգանակություն կազմակերպել զեյթունցիների օգտին: Հեղինակ է «Զէյթունի անցեալէն եւ ներ-կայէն» (մաս 1, 2, 1900, 1903), «Հրացա-նակիր քահանան եւ լերան քարոզիչը» (1910) երկերի:

ՍԵՄԵՐՋՅԱՆ Լյութեր (Կարապետ) Զորջ (1905–1997), կոնստրուկտոր, գյուտարար: 1921–ից՝ ԱՄՆ–ում: Հեղինակ է տեխնի-կայի մոտ 30 բնագավառների ավելի քան 200 գյուտերի, որոնց թվում՝ բան-կոմատը, ինքնակիզակետող լուսախցի-կը, գունավոր ռենտգենյան ապարատը, գիշերային և «կույր թռիչքների» ժամա-նակ օդաչուների կողմնորոշման սարքը, հիվանդությունների ենթաձայն. բուժման սարքավորումները ևն:

ՍԵՄԵՐՋՅԱՆ Հայկ Հակոբի (1910–1988), ճարտարագետ–մեխանիկոս: Տեխ. գիտ. դ–ր (1966): Աշխ–ները վերաբերում են պինդ մարմնի ֆիզիկային, բարձր ճնշում-ներում և ջերմաստիճաններում բա-ղադրանյութերի և շինվածքների ստաց-ման հարցերին: Ս–ի ղեկավարությամբ գերիզոր հիդրավլիկ մամլիչի հիմքի վրա Մոսկվայում ստեղծվել է ԳՀ համալիր:

ԽՍՀՄ Լենինի, Հոկտ. հեղ–յան, Աշխ. կարմիր դրոշի շքանշաններ:

ՍԵՄԵՐՋՅԱՆ Միհրան Հակոբի (1932–1986), էլեկտրատեխնիկ: Տեխ. գիտ. դ–ր (1984): ԵրՄՄԳՀԻ տնօրեն (1977–86): Աշխ–ները վերաբերում են համապիտա-նի կիսահաղորդչային ԷՀՄ–ների, հաշվիչ համակարգերի մշակման հարցերին: Ս–ի ղեկավարությամբ ստեղծվել են «Հրազ-դան» և «Նաիրի», ինչպես նաև ԵՍ–1030, ԵՍ–1045 2–րդ սերնդի հաշվիչ մեքենա-ները: ՀԽՍՀ (1976) և ԽՍՀՄ (1980) Պետ. մրց–ներ:

ՍԵՄԵՐՋՅԱՆ Սուրեն Պետրոսի (1929–2011), կենսաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1989), պրոֆ. (2007): Աշխ–ները վերաբերում են կենսաֆիզիկայի, ռադիոկենսբ–յան, ռադիոէկոլոգիայի, գոտ–յան հարցերին: Հեղինակ է ցորենի, սիսեռի, ծխախոտի մի քանի սորտերի:

ՍԵՄԵՐՋՅԱՆ Վազգեն Վարդգեսի (1931–2013), սրտաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1973), պրոֆ. (1980): 2005–ից՝ ՀՀ ավանդ. բժշկության համալսարանի պրոռեկտոր: Աշխ–ները վերաբերում են սիրտանոթ. վիրաբուժության, վնասվածքաբանութ-յան, վերակենդանացման, առողջապ-յան կազմակերպման խնդիրներին: ՌԴ բժշկատեխ. գիտ–յունների (1995–ից), Գիտ–յունների միջազգ. (Ավստրիա, 2001) ակադ–ների անդամ:

ՍԵՄԻՆԱՐԻՈ, (լատ.՝ seminarium – օջախ, օրրան, փխբ. իմաստով՝ դպրոց), հատուկ միջնակարգ ուս. հաստատություն: «Ս.» են կոչվում նաև քրիստ. միջնակարգ հո-գևոր, նախկինում՝ նաև տարր. դպրոցի ուսուցիչներ պատրաստող ուս. հաստա-տությունները:

ՍԵՄԻՆԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Ալթայի հս-արմ–ում՝ Կատունն գետի ձախ ափին: Երկ.՝ 120 *կմ*, առլգն բարձր.՝ 2507 *մ* (Սառլիկ լ.): Լ–շղթայից սկիզբ են առնում Սեմա, Եմուռ-լա, Բերտա, Պեևչանայա և այլ գետեր:

ՍԵՄԻՆՈՄԱ (< լատ. semen, սեռ. հոլ.՝ seminis – սերմ և ...*ոմա*), սեռ. գեղձերի ուռուցք. հիվանդանում են առավելապես երիտասարդ տղամարդիկ, սովորաբար չարորակ է:

ՍԵՄԻՊԱԼԱՏԻՆՍԿ, ք. (1782–ից) Ղա-զախստանի հս-արլ–ում: Բն.՝ 210,2 հզ. (2010): Նվինգստ՝ Իրտիշ գետի ափին: Երկաթ. հանգույց է: Գործում է Ոսկու լ–հարստացուցիչ կոմբինատ: Կան բու-հեր, թատրոններ, Ֆ. Մ. Դոստոևսկու և ղազախ բանաստեղծ Ա. Կունանբաևի և այլ թանգարաններ: Հիմնադրվել է 1718–ին՝ որպես ռուս. ամրոց, ժամանակակից վայրում՝ 1776–ից: Ս–ի շրջակայքում կար միջուկ. զենքի ստորերկրյա փորձարկման պոլիգոն (դադարեցվել է 1991–ից):

ՍԵՄՅՈՆՈՎ, Յուլիան Սեմյոնովիչ (1931–1993), ռուս գրող: «Սովերշեննո սեկ-րետնո» (ռուս.) թերթի հիմնադիր–խմբ. (1983–ից): Հեղինակ է «Գարնան տաս-նյոթ ակնթարթ» (1969, հայ.՝ 1972, հե-ռուստատես. կինոնկար՝ 1973), «ՏՄՍՍ–ը լիազորված է հայտարարելու» (1979, հեռուստատես. կինոնկար՝ 1984) քաղ. դեդեկտիվ. վիպակների, «Այլընտրանք»

(գիրք 1–4, 1975) տարեգրության, «Այրում» (1977–78, Ֆ. Է. Ձերժինսկու մասին), «Մամուլի կենտրոն» (1984), «Բռնազավթում» (գիրք 1–3, 1985–87) վեպերի: Հայ. հրատարակվել են նաև «Ռումբ նախագահի համար» (1975), «Երես առ երես» (1986), «Հրամայված է ողջ մնալ» (1988) վեպերը, «Օգարյովի 6: Վիպակներ» (1977) ժող-ը:

ՍԵՄՅՈՆՈՎ, Յուրի Պավլովիչ (ծ. 1935), տիեզ. տեխնիկայի բնագավառի ռուս գիտնական: ՌԳԱ ակադ. (2000): Սոց. աշխ. հերոս (1976): Աշխ-ները վերաբերում են տիեզ. տեխնիկայի և օդաչուավոր տիեզ. համալիրների էներգետիկային:

Լենինյան (1978), ԽՍՀՄ Պետ. (1985) մրց-ներ:

ՍԵՄՅՈՆՈՎ, Նիկոլայ Նիկոլաևիչ (1896–1986), ռուս. ֆիզիկոս և ֆիզքիմիկոս, քիմ. ֆիզիկայի հիմնադիրներից, գիտ. դպրոցի հիմնադիրը: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1932): Սոց. աշխ. հերոս (1966, 1976): Ստեղծել է ճյուղավորված շղթ. ռեակցիաների ընդհ. քանակ. տեսությունը (1934): Աշակել է գազ. խառնուրդների ջերմ. պայթյունի տեսությունը: ՀՀ-ում Ս-ի դպրոցի նշանավոր ներկայացուցիչն Արամ Նալբանդյանն է:

ԽՍՀՄ Պետ. (1941, 1949), Լենինյան (1976), Նոբելյան (1956) մրց-ներ:

ՍԵՄՅՈՆՈՎ, Վլադիմիր Մագոմետովիչ (ծ. 1940), ռուս. ռազմ. և պետ. գործիչ, բանակի գեն. (1996): 1999–2003-ին՝ Կարաչայ-Չերքեզ. Հանրապետության նախագահ: 1982-ից՝ բանակ. կորպուսի, 1984-ից՝ բանակի, 1988-ից՝ Անդրբայկալյան ՋՕ զորքերի (1986-ից՝ 1-ին տեղակալ) հրամ.: 1991-ի օգոստ-ից՝ Ցամաք. զորքերի գլխ. հրամ., ԽՍՀՄ պաշտպ-յան նախարարի տեղակալ: 1992–96-ին՝ ՌԴ Ցամաք. զորքերի գլխ. հրամ.: 1998-ին՝ ՌԴ պաշտպ-յան նախարարի գլխ. ռազմ. խորհրդական: 2004-ին հեռացվել է զինվ. ծառայությունից:

ՍԵՄՅՈՆՈՎ, Վլադիմիր Նիկոլաևիչ (1874–1960), ռուս. ճարտ.: Մոսկվայի գլխ. ճարտ. (1930–34), ղեկավարել է գլխ. հատակագծի մշակման աշխ-ները (հաստատվել է 1935-ին): Հեղինակ է Կովկասի հանք. ջրերի շրջանի (1933–36), Կիսլովոդսկի զարգացման գլխ. (1936) հատակագծերի, Դոնի Ռոստովի վերականգնման և զարգացման նախագծերի (1944–45):

ՍԵՄՅՈՆՈՎ-ՏՅԱՆ-ՇԱՆՍԿԻ (մինչև 1906-ը՝ Սեմյոնով) Պյոտր Պետրովիչ (1827–1914), ռուս աշխարհագետ, վիճակագիր, հաս. գործիչ: Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. ակադ. (1873): Ռուս. աշխարհագր. ընկ-յան փոխնախագահ և ղեկ. (1873–1914), Ռուս. միջատաբան. ընկ-յան նախագահ (1889): 1856–57-ին ուսումնասիրել է Տյան Շանի լեռնագր. և վերընթաց գոտիականության 1-ին սխեման: Կազմել է «Ռուսական կայսրության աշխարհագրական-վիճակագրական բառարանը» (ռուս., հ. 1–5, 1863–85), «Ռուսաստան» աշխարհագր. բազմահատորյակը (Վ. Ի. Լամանսկու հետ, ռուս., 1899–1914):

ՍԵՄՅՈՒԵԼՍՈՆ (Samuelson) Փոլ Էնթոնի (1915–2009), ամերիկացի տնտեսագետ: Բրիտ. ակադ-ի թղթ. անդամ (1960): Ամերիկ. տնտեսագիտ. ընկերակցության նախագահ (1961): Նեոքեյնսականության հիմնադիրներից: Աշխ-ները վերաբերում են ստատիկ ու դինամիկ տնտեսագիտ. տեսության և տնտեսագիտ-յան բնագավառում վերլուծության ընդհ. մակարդակի բարձրացման հարցերին: Նոբելյան մրց. (1970):

ՍԵՄՊՐՈՒՆ (Semprun) Խորխե (1923–2011), իսպանացի ֆրանսիագիր գրող, պետ. գործիչ: Դիմադրության շարժման մասնակից: 1943-ին ձերբակալվել է, մինչև 1945-ը եղել է Բուխենվալդի համակենտրոնացման ճամբարում: Հեղինակ է «Երկար ճանապարհ» (1963), «Նեչաևը վերադարձել է» (1987), «Քսան տարի և մեկ օր» (2003) և այլ վեպերի:

«ՍԵՄՈՒԻ ԸՆԴ ԿՈ» ՄՊԸ, մետաղե իրերի (տանիքի թիթեղե ծածկեր, մետաղ. կղմինդրներ, դետալներ, ցանցեր ևն) արտադր-յան ձեռն. ՀՀ-ում: Հիմնադրվել է 2003-ին: Կենտրոնատեղին՝ Կոտայքի մարզի Եղվարդ ք-ում:

ՍԵՅ, **ՍԷյ** (Say), Ժան Բատիստ (1767–1832), ֆրանսիացի տնտեսագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1816): «Քաղաքատնտեսության տրակտատի…» (1803) հեղինակը: Արտադր-յան գործոնների տեսության հեղինակներից. ձևակերպել է շուկայի օրենքը՝ ենթադրելով, որ արդյունքների փոխանակությունն ինքնաբերաբար հանգեցնում է գնման ու վաճառքի հավասարակշռմանը:

ՍԵՅԱԴ (Մադաթյանց Պետրոս Տեր Հովսեփի, 1810–1876), աշուղ: Հորինել է միայն հայ. երգեր՝ ուրույն հայկ. հանգերով, բովանդակությամբ, խարազանել անարդարությունը («Վասն աշխարհի»), տգիտությունը («Վաղնջաց ժամանակաց նկարագիր»), ստեղծել նաև սիրո, վայելքի երգեր («Էդ կարմիր վարդ թուշիդ», «Ով սիրուն թառ…» ևն), առանձնանում է «Արի նազելի» մուհամմազը: Առաջին ժող-ը՝ «Զանազան երգք» (1857, 71 երգ), մյուս երգերն ընդգրկվել են այլ երգարաններում, «Սոխակ Հայաստանի» ժող-ի հատորներում: Աշակել է աշուղ. տաղաչափ. նոր ձևեր:

ՍԵՅԴՈ ՊՈՂԼՈՍ (1874–1907), ազգ-ազատագր. շարժման մարտիկ, ֆիդայի: 1904-ին գործուն մասնակցություն է ունեցել Սասունի ինքնապաշտպ. մարտերին: Շարուրում ղեկավարել է Կովկասի թաթարների դեմ հայերի պայքարը: 1907-ին դարձել է *Գևորգ Չավուշի* մերձավոր զինակիցը: Մասնակցել է Սուլուխի կռվին և վերջինիս զոհվելուց հետո կազմակերպել Սուլուխի պաշտպ-յունը: Սպանվել է քրդերի ձեռքով:

ՍԵՅԻԴ (արաբ.՝ պարոն, տեր), Մերձ. և Միջին Արևելքի երկրներում այն մահմեդական-կանների պատվ. տիտղոսը, որոնք իրենց ծագումնաբանությունը կապում են Մուհամմեդ մարգարեի (շիաները՝նաև *Ալիի*) տոհմի հետ: Նախահայրամ՝ ազնվական ցեղի ներկայացուցիչ:

ՍԵՅԻԴ ՔՈՒԹԲ (1906–1966), եգիպտացի գրող և կրոն. գործիչ: «Մուսուլման եղբայրներ» շարժման գաղափարախոս: Մեղադրելով ժամանակակից հաս-յանը անհավատության մեջ՝ կոչ է արել վերադառնալ շարիաթի օրենքներին: Իր ելույթների համար բազմիցս հալածվել է, մահապատժի է ենթարկվել՝ Գ. Նասերի դեմ պետ. հեղաշրջում նախապատրաստելու մեղադրանքով:

ՍԵՅԼԱՆ (Մադոյան Արշակ Գևորգի, 1861–1934), մանկավարժ, պատմաբան: Արշակ *Սադոյանի* պապը: 1886-ից Սասունում հիմնադրել է նոր տիպի ուսումնարաններ, դասավանդել է Զմյուռնիայում, Կարինում, Տրապիզոնում, 1920–24-ին՝ Զավախքում, Ծալկայում, Մանգլիսում: Հեղինակ է «Բաղդի մէկ խաղը» (1890), «Խան-Միրան» (1892), «Հայթա-Ֆիրատ» (1904), «Լէօն-կայսր» (1904), «Կրոնը յեվ աշխատավորության առողջապահությունը» (1933), «Սասուն. պատմաազգագրական ակնարկ» (հրտ.՝ 1990), «Նշմարներ» (հրտ.՝ 1999) գրքերի:

ՍԵՅԼԵՄ (Սելամ), ք. Հնդկաստանի Թամիլնադ նահանգում: Բև.՝ 895 հզ. (2010): Գեղտ. շրջանների կենտրոն է: Մերձակայքում արդյունահանում են մագնեզիտ:

ՍԵՅՀԱՆ (թուրք.՝ Seyhan, նախկինում՝ Սարոս), գետ Թուրքիայում: Ս. է կոչվում Գյոքսու (Շղրկա) ձախակողմյան վտակն ընդունելուց հետո: Երկ.՝ 516 *կմ*, ավազանը՝ 20,7 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը Աղանա ք-ի մոտ՝ մինչև 200 *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Թեջեր լ-շղթայի (Կիլիկիա) հվ. լանջից, թափվում Միջերկր. ծովի Մերսինի ծոցը: Մնումը անձրևային է, հորդանում է: Գործում է ջրէկ: Ձրերն օգտագործվում են ոռոգման համար:

ՍԵՅՄ (լեհ՝. sejm), 1. պետ. իշխանության բարձրագույն մարմին Լեհաստանում 1947–88-ին: 2. Դասային ներկայացուցչ. հաստատություն Լեհաստանում, Չեխիայում, Լիտվայում և Արլ. Եվրոպայի մի քանի երկրներում: 3. Լիտվայի (1922–40 և 1992-ից) և Լատվիայի (1922–34 և 1993-ից) խորհրդարանները, Լեհաստանի խորհրդարանի ստորին պալատը (1921–39 և 1989-ից):

ՍԵՅՇԵԼՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ (Seychelles), պետություն Արլ. Աֆրիկայում՝ համանուն և Ամիրանտյան, Ալդաբրա, Կոսմոլեդո, Ֆարկուար ու մերձակա մոտ 115 մանր կղզիներում: Տարածքը՝ 455 *կմ*^{2}, բն.՝ 88,3 հզ. (2010): Մայրաքաղաքը՝ *Վիկտորիա*: Պետ. լեզուները՝ սեյշելյան կրեոլերեն, անգլ., ֆրանս.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ Ազ: Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է: Բաժանված է 18 վարչ. մարզերի: Անդամակցում է ՄԱԿ-ին, Ազգերի համագործակցությանը, Աֆրիկ. միությանը: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 19,4 հզ. ԱՄՆ դոլար է (2005): Արտահանում է ձուկ, նավթամթերք, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթ, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ սեյշելյան ռուփի: Ս. կ. հայտնաբերել են պորտուգալացի ծովագնացները XV դ-ի սկզբին: XVIII դ-ի կեսին գաղութացրել են ֆրանսիացիները, 1794-ին զավթել են անգլիացիները: 1903-ից՝ Մեծ Բրիտանիայի գաղութ: 1976-ից անկախ պետություն է: 1977–91-ին իշխանության ղեկին է մարքսիստ. կողմնորոշման Սեյշելյան կղզիների ժողդ-ի առաջադիմ. ճակատը (ԺԱՃ): 1991-ին ընդունվել է բազմակուս. համակարգ: 2004-ին Ս. կ-ի ԺԱՃ առաջնորդ Ֆ. Ա. Ռեննեն կամավոր թողել է նախագահի պաշտոնը: 2016-ին նախագահ է ընտրվել Դեննի Ֆորը (Ազգ. կուս-յունից):

ՍԵՅՄՄԱԳԻՐ, **երկրաշարժագիր**, Երկրի առաձգ. տատանումների անընդհատ գրանցում (սեյսմագրիչներով և սեյսմընդունիչներով): Տատանումներն առաջանում են երկրաշարժերից և պայթյուններից, Ս-ի միջոցով որոշվում են առաձգ. ալիքների տեղ հասնելու պահերը, նրանց ամպլիտուդները (լայնույթ) և պարբերությունը (պարբերաշրջան):

ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, **հակասեյսմիկ շինարարություն**, *երկրաշարժերի* ժամանակ սեյսմիկ ազդեցություններին դիմակայող շենքերի և կառույցների շին-յուն: Շենքերի և կառույցների համար (ըստ ՀՀ-ում ընդունված 12-բալլանոց սանդղակի) վտանգավոր են այն երկրաշարժերը, որոնց առլգն ինտենսիվությունը 7 և ավելի բալլ է: Ս. շ-յան համար անհրաժեշտ է նախ շին. բարենպաստ հրապարակի ընտրությունը, ապա՝ հատուկ կառուցվածք. միջոցառումները, որոնք նպաստում են շին-յան կայունությանն ու ամրությանը:

ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, երկրաշարժի ազդեցություններին դիմակայելու շենքերի և շինությունների (գլխավորապես՝ նրանց կրող կառուցվածքների) ունակությունը՝ շահագործման որակների պահպանմամբ:

ՍԵՅՍՄԱՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ, հետախուզության երկրաֆիզ. մեթոդների խումբ՝ հիմնված Երկրի կեղևի տարբեր միջավայրերում առաձգ. (սեյսմիկ) ալիքների տարածման առանձնահատկությունների վրա: Կիրառվում է Երկրի կեղևի կազմության ուսումնասիրման, գլխավորապես՝ նավթագազակիրների ևն կառուցվածքների, և հորատման նախապատրաստման հետախուզման համար:

ՍԵՅՍՄԱՇՐՋԱՆԱՅՈՒՄ, Երկրի մակերևույթին պոտենցիալ երկրաշարժի վտանգավորության աստիճանով տեղամասերի շրջանների, մարզերի առանձնացումը: Իրականացվում է սեյսմոլոգ. համալիր վերլուծության, երկրբ., երկրաֆիզ. տվյալների հիման վրա: Կառուցապատվող տարածքի համար կատարվում են Ս-ման տվյալների ճշգրտում և սեյսմիկ միկրոշրջանացում:

ՍԵՅՍՄԻԿ ԱԼԻՔՆԵՐ, առաձգ. տատանումներ, որոնք տարածվում են երկրաշարժերի, պայթյունների և այլ օջախներից: Երկայն. Ս. ա. սեղմման ալիքներ են (միջավայրի մասնիկների տատանումները համընկնում են ալիքի տարածման ուղղությանը), լայնակի Ս. ա.՝ սահքի ալիքներ (միջավայրի մասնիկների տատանումներն ուղղահայաց են ալիքի տարածման ուղղությանը):

ՍԵՅՍՄԻԿ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ, տվյալ տարածքի սեյսմիկ ռեժիմի չափաքանակը, որը միավոր ժամանակում միավոր մակերեսի հաշվով որոշակի էներգիայով (մագնիտուդով) երկրաշարժերի միջին քանակն է: Առանձնացված են Երկրի Խաղաղօվկիանոս. (Խաղաղ օվկ-ի երկար-յամբ), Ալպ-Հիմալայան, Արևելաաֆրիկ. և այլ սեյսմիկ գոտիներ: ՀՀ և Հայկ. լ-աշխարհը բարձր սեյսմասկտիվության տարածաշրջան է:

ՍԵՅՍՄԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, երկրաշարժերի անընդմեջ դիտումների և ստացված գրառումների մշակման ծառայություն: Կատարում են սեյսմիկ կայանները, արդյունքները փոխանցվում են Միջազգ. սեյսմիկ կենտրոն (Մեծ Բրիտանիա):

ՍԵՅՍՄԻԿ ԿԱՅԱՆ, գիտ. հաստատություն. իրականացնում է երկրաշարժերից առաջացած Երկրի մակերևույթի տատանումների գրանցումը, ինչպես նաև ստացված տվյալների առաջն. վերլուծությունը: Համաշխ. սեյսմիկ ցանցն ընդգրկում է հազարավոր Ս. կ-ներ, ՀՀ-ում՝ 11: Հետախուզ. Ս. կ. գրանցում է արհեստ. սեյսմիկ ալիքները՝ երկրակեղևի երկրբ. կառուցվածքի ուսումնասիրման և օգտ. հանածոների հանքավայրերի հետախուզման նպատակներով:

ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (ՍՊԱԾ), ՀՀ երկրաշարժերի կանխատեսման և մշտադիտարկման, սեյսմիկ ռիսկի նվազեցման ու գնահատման, նրա վտանգի հետ կապված երկրորդ. վտանգի և քաղաքներում շրջակա միջավայրի վրա ուժեղ երկրաշարժերի ազդեցության գնահատման, բնակչությանը երկրաշարժերից պաշտպանելու կանոնների ուսուցման, տուժածների որոնումն ու փրկարար. աշխ-ները համակարգող ծառայություն: Ստեղծվել է 1991-ին՝ ՀՀ Կառ-յանն առընթեր, 2005-ից՝ ՀՀ ԱԻՆ գործակալություն:

ՍԵՅՍՄԻԿ ՍԱՆԴՂԱԿՆԵՐ, Երկրի մակերևույթին երկրաշարժերի սաստկության գնահատման սանդղակ: ՀՀ-ում ընդունված է 12-բալլանոց սանդղակը (ինչպես՝ ՌԴ-ում, Եվրոպայի, Լատ. Ամերիկայի երկրներում՝ 10, Ճապոնիայում՝ 7): Ըստ իրենց էներգիաների՝ երկրաշարժերի համեմատման համար ընդունված է, օր., Ռիխտերի սանդղակը:

ՍԵՅՍՄՈԼՈԳԻԱ, երկրաֆիզիկայի բաժին. ուսումնասիրում է երկրաշարժերը և նրա հետ կապված երևույթները: Բացահայտում է երկրաշարժերի պատճառները և նրա կանխատեսման հնարավորությունները, երկրաշարժերի կապը տեկտ. շարժընթացների հետ: Հետազոտությունների արդյունքներն օգտագործում են Երկրի ներքին կառուցվածքի ուսումնասիրման, սեյսմաշրջանացման խնդիրների նևի համար: Որպես ինքնուրույն գիտ-յուն՝ ձևավորվել է XIX դ-ի 2-րդ կեսից:

ՍԵՅՍՄՈՄԵՏՐԻԱ, *սեյսմոլոգիայի* բաժին. զբաղվում է սեյսմիկ ալիքների գրանցման մեթոդների և գրանցող սարքերի մշակմամբ: Որպես գիտ. ուղղություն սկսել է զարգանալ XX դ-ի սկզբից: Սեյսմիկ տատանումների համար նախատեսված գործիքները կոչվում են սեյսմոգրիչներ, իսկ գրանցման արդյունքները՝ սեյսմոգրեր:

ՍԵՅՍՄՈՆԱՍՏԻԱ, բույսերի օրգանների (օր.՝ ամոթխած պատկառուկի տերևների) շարժումները՝ ի պատասխան հպմանը և թափահարմանը:

ՍԵՅՍՄՈՏԵԿՏՈՆԻԿԱ, երկրբ-յան բաժին. ուսումնասիրում է երկրաշարժերի առաջացման պայմանները: Ուսումնասիրության արդյունքներն արտահայտվում են քարտեզների ձևով: Ս. հնարավորություն է տալիս կանխագուշակելու սպասվելիք երկրաշարժերի տեղը, ուժը և մոտավոր հաճախականությունը, ինչպես նաև կազմելու սեյսմիկ շրջանացման քարտեզներ:

ՍԵՅՍՅԱՆ Ռուբեն Պողոսի (ծ. 1938), կիսահաղորդիչների և հետերոկառուցվածքների բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1978), պրոֆ. (1983): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (2008, ՌԴ): «Պատուհան դեպի միկրոաշխարհ» (ռուս.) գիտակրթ. ամսագրի գլխ. խմբ.: Աշխ-ները վերաբերում են միկրոէլեկտրոնիկային, նանոկառուցվածքների և կիսահաղորդիչների սպեկտրադիտմանը:

ՍԵՅՎԱԼ (ձողաձկային կամ ծովատառեխային), շերտավոր կետաձկների ընտանիքի ծով. կաթնասուն կենդանի: Երկ.՝ մինչև 19 *մ*: Տարածված է բոլոր օվկ-ներում: Անհետացման վտանգի տակ է: 1970-ական թթ-ից ամենուրեք որսն արգելված է:

ՍԵՅՐԱՆՅԱՆ Ալեքսանդր Պարույրի (ծ. 1947), մեխանիկայի բնագավառի գիտնական: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1988): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (2008), ՌԲՆԳԱ ակադ. (2010): ՄՊՀ մեխանիկայի ԳՀԻ առաջատար գիտաշխատող: Աշխ-ները վերաբերում են կայունության, լավարկման, առանձնահատկությունների և բիֆուրկացիայի տեսություններին: Նյու Յորքի ԳԱ անդամ (1995): ՌԳԱ Մ. Ա. Լավրենտևի (2013), Տուլիո Լևի Չիվիտայի անվ. միջազգ. (2012) մրց-ներ: Հայրը՝ **Պարույր Աբրահամի Ս.** (1912– մ. թ. անհտ), պատմ. գիտ. թեկնածու (1948): Եղել է ԵՊՄԻ պրոռեկտոր (1949–54, 1964–71), Ռուս. պետ. մանկավարժ. ինստ-ի (հետագայում՝ Վ. Յ. Բրյուսովի անվ.) ռեկտոր (1954–57):

ՍԵՅՐԱՆՅԱՆ Բենիկ Մկրտչի (1913–2003), գրող: Վրաստանի մշակույթի վաստ. գործիչ (1971): 1933–96-ին (ընդմիջումներով)՝ Վրաստանի ԳՄ հայկ. մասնաճյուղի նախագահ: Հեղինակ է «Ծիրանաքար» (1946), «Աղբյուրներ» (1953), «Լեռներում» (1958) պատմվածքների ժող-ների, «Աստղերի հովիտ» (գիրք 1, 1959, գիրք 2, «Ճամփաներ և ճակատագրեր», 1968) վեպի, «Աստղաձոր» (1963) վիպակի, «Ծովահավքի կանչը» (1977), «Մասրուտի եղնիկը» (1988), «Հայկական նովելինաներ» (1999), «Սրտի ծուխ» (2002) վիպակների, պատմվածքների, նովելների ժող-ների:

ՍԵՅՐԱՆՅԱՆ (Սեյրանով) Սողոմոն Գաբրիելի (1907–1974), թառահար: ՀԽՍՀ ժող. արտիստ (1961): 1926-ից հանդես է եկել Ադրբեջանի ժող. գործիքների անսամբլում: 1944-ից՝ Երևանում. եղել է Հայֆիլհարմոնիայի, ապա՝ ռադիոկոմիտեի ժող. գործիքների անսամբլի մենակատար: Ս-ի արվ-ին բնորոշ էր կատարման վարպետությունը: Երկացանկում՝ գործիք. բազմաթիվ պիեսներ և մուղամներ:

Ժող. գործիքների համամիութ. մրցույթի 1-ին մրց. (1939, Մոսկվա), ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան:

ՍԵՅՐԱՆՈՎ, Սերգեյ Գերմանի (ծ. 1963), ֆիզկուլտուրայի և սպորտի էկոնոմիկայի և կառավարման ոլորտի մասնագետ: Մանկավարժ. գիտ. դ-ր (1996), պրոֆ. (1998): ՌԴ ս. վ. (թեքվանդո, 1995), 4-րդ դանի սև գոտի, միջազգ. կարգի մրցավար (1995): Ֆիզկուլտուրայի, սպորտի և զբոսաշրջության Մոսկվայի մարզի վաստ. աշխատող (1999): Մոսկվայի ֆիզկուլտուրայի պետ. ակադ-ի ռեկտոր (1997–ից), Ռուսաստանի ուսանող. սպորտ. միության նախագահ (2016–ից):

ՍԵՅՐԻ (Գուլոյան Ավետիք Համբարձումի, 1880–1920), գրող, մանկավարժ: 1920-ին՝ Զանգեզուրի գավկոմի քարտուղար: Հեղինակ է չափածո արձակ պատմվածքների, գրույցների («Մոռացության հովիտը», «Զգոն ոգի», «Վարդերը», «Առաջին անձրևը»), «Ծիլ ու ծաղիկ» (1913), «Հուշարձան» (1960), «Կանաչող ճամփաներ» (1981) բանաստեղծությունների ու պատմվածքների ժող-ների:

ՍԵՅՖԵՐՏԻ ԳԱԼԱԿՏԻԿԱՆԵՐ, պարուրաձև, ակտիվ միջուկներով գալակտիկաներ, որոնց սպեկտրն ունի ճառագայթման լուսավոր ու լայն գծեր, որոնք վկայում են գազերի հզոր, մինչև մի քանի հզ. *կմ/վ* արագությամբ արտանետումների մասին: Առաջինը նկարագրել է ամերիկացի աստղագետ Կ. Սեյֆերտը (Seyfert, 1911–

1960) 1943–ին: Ըստ Խաչիկյան–Վիդեմանի դասակարգման՝ U. գ–ի սպեկտրները բաժանվում են 1–ին (Sy–1) և 2–րդ (Sy–2) դասերի, որոնք միմյանցից տարբերվում են առաքման գծերի լայն–յամբ:

ՍԵՆ (Sen) Ամարթիյա (ծ. 1933), հնդիկ տնտեսագետ: Աշխ–ները վերաբերում են աղքատության և սովի, անհավասարության, բարեկեցության, տնտեսագիտ. տեսության խնդիրներին: Նորելյան մրց. (1998):

ՍԵՆ (Seine), գետ Ֆրանսիայում: Երկ.՝ 776 *կմ*, ավազանը՝ 78,6 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 400–500 *մ*^{3}/*վ*: Հոսում է հիմնականում Փարիզյան ավազանով, թափվում Լա Մանշ նեղուցը՝ առաջացնելով Էստուար: Նավարկելի է Տրուա ք–ից: Ջրանցքներով միացած է Սոմ, Շելդ, Մաաս, Սոն, Հռենոս, Լուար գետերին: Գլխ. նվինգստ–ներն են Փարիզը, Ռուանը, Հավրը:

ՍԵՆ ԲԵՌՆԱՐ (Saint–Bernard) **Մեծ և Փոքր**, 2 լ–անցք Ալպերում՝ Իտալիայի ու Շվեյցարիայի (Մեծ Ս. Բ., բարձր.՝ 2469 *մ*) և Ֆրանսիայի (Փոքր Ս. Բ., բարձր.՝ 2188 *մ*) սահմաններին: Լ–անցքների միջև (Մոնբլանի թունելով) կա մայրուղի:

ՍԵՆ ԳՈԹԱՐԴ (Saint–Gothard), լ–անցք Ալպերում, Հվ. Շվեյցարիայում: Բարձր.՝ 2108 *մ*: Կան մայրուղի, Ս. Գ–ի մոտ՝ 1100 *մ* բարձր–յան վրա՝ երկթղ. (երկ.՝ մոտ 15 *կմ*) և ավտոճանապարհ. (երկ.՝ 16,3 *մ*) թունելներ:

ՍԵՆ ԼՈՒԻ (Saint–Louis), ք. Սենեգալում, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 178 հզ. (2010): Նվինգստ՝ Սենեգալ գետի ափին: Ունի համալսարան: Կան գաղութ. ժամանակների հուշարձաններ: Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՍԵՆ ՄԱԼՕ (Saint–Malo), ծովածոց Ֆրանսիայի հս. ափերին՝ Բրետան և Կոտանտեն թ–կղզիների միջև: Երկ.՝ 110 *կմ*, լայն. մուտքի մոտ՝ մինչև 125 *կմ*, խոր.՝ մինչև 51 *մ*:

ՍԵՆ ՊԻԵՌ ԵՎ ՄԻՔԵԼՈՆ (Saint–Pierre et Miquelon), ցածրադիր կղզեխումբ Հս. Ամերիկայի արլ. ափերին՝ Նյուֆաունդլենդ կղզուց հվ: Ֆրանսիայի հատուկ տարածք. միավոր: Տարածքը՝ 242 *կմ*^{2} (Միքելոն կղզին՝ 216 *կմ*^{2}): Բն.՝ 7,1 հզ. (2009): Պետ. լեզուն՝ ֆրանս.: Վարչ. կենտրոնը՝ Սեն Պիեռ ք.: Վարչականորեն բաժանվում է 2 կոմունայի: Դրամ. միավորը՝ եվրո: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 7 հզ. ԱՄՆ դոլար է: Տնտ–յան հիմքը ձկնաբուծությունն է: Զարգացած է զբոսաշրջությունը: Արտահանում է ձուկ: Ծով. նվինգստ–ը՝ Սեն Պիեռ ք.:

ՍԵՆԱԺ, մինչև 50–55 % խոնավությամբ, թառամեցված, մանրացրած և անօդ պայմաններում հերմետիկ տարողություններում պահածոյացված խոտ: Մննդարարությամբ գրեթե համարժեք է կանաչ կերերին:

ՍԵՆԱԼ Աթանես (Նալբանդյան Աթանես Սարգսի, 1909–1970), բանաստեղծ: Հեղինակ է «Արևային գրոհ» (1932), «Արյուն և հաղթանակ» (1936), «Երգեր գրված մարտերում» (1942), «Թռիչք» (1955), «Նվագներ» (1958), «Հողի բույրը» (1960), «Կյանքի հետ» (1963), «Իմ հացը» (1968) բանաստեղծությունների ժող–ների:

ՍԵՆԱՏ (լատ.՝ senat, senex – ծերունի), 1. **ծերակույտ**, պետ. իշխանության բարձրագույն մարմին Հին Հռոմում: 2. Կառավարման բարձրագույն մարմին Ռուսաստանում: 1711–ին հիմնադրել է Պետրոս I–ը: XIX դ.–1917–ին եղել է դատ. և հսկողության բարձրագույն մարմին: 3. Խորհրդարանի վերին պալատի անվանումը մի շարք երկրներում (ԱՄՆ, Իտալիա, Իռլանդիա ևն):

ՍԵՆԱՏՈՒՍ ԿՈՆՍՈՒԼՏՈՒՄ (լատ.՝ senatus consultum), 1. ***Սենատի*** կարծիքը Հին Հռոմում, որը ձևակերպվում էր սահմանված կարգով և ուներ պարտադիր բնույթ: 2. ***Կոնսուլության***, Ֆրանիսայում Առաջին և Երկրորդ կայսրությունների շրջանում այն ակտերը, որոնք փոխում կամ լրացնում էին սահմանադրությունը:

ՍԵՆԵԲԵՈՒՆԱՐ, պահակաշների ցեղ: Բուծվել է XIII–XIV դդ–ում Շվեյցար. Ալպերում: Սիրող.նպատակներով բուծում են Եվրասիայի երկրներում:

ՍԵՆԳԵՐ (Սանգեր, Sanger) Ֆրեդերիկ (1918–2013), անգլիացի կենսաքիմիկոս: Առաջարկել է սպիտակուցների առաջն. կառուցվածքի հետազոտման հիմն. մեթոդները: Հաստատել է ինսուլինի մոլ–ների քիմ. կառուցվածքը, ինսուլինի սինթեզը կողավորող գենի առաջն. կառուցվածքը: Նոբելյան մրց. (1958, 1980, Ու. *Գիլբերտի* հետ):

ՍԵՆԳՈՐ (Senghor) Լեոպոլդ Սեդար (1906–2001), սենեգալցի պետ–քաղ. գործիչ, բանաստեղծ: Ֆրանսիայի ակադ–ի անդամ (1983): Սենեգալի Հանրապետության նախագահ՝ 1960–80–ին: 1958–80–ին՝ իշխող՝ Սենեգալի սոց. կուս–յան գլխ. քարտուղար, 1981–ից՝ պատվ.նախագահ: Ֆրանս. լույս է ընծայել բանաստեղծությունների ժող–ներ, «Չակա» (1949) դրամատիկ. պոեմը:

ՍԵՆԳԱՅ, ք. Ճապոնիայում՝ Հոնսյու կղզում, Մյագի պրեֆեկտուրայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1.032 հզ. (2010): Կան մետրոպոլիտեն, համալսարան: Զգալիորեն տուժել է 2011–ի երկրաշարժի և ցունամիի ժամանակ:

ՍԵՆԴԲԵՐԳ (Sandburg) Կառլ (1878–1967), ամերիկացի բանաստեղծ: Հեղինակ է «Բանաստեղծություններ Չիկագոյի մասին» (1916), «Ծուխ և պողպատ» (1920), «Բարի լույս, Ամերիկա» (1928) ժող–ների, «Ժողովուրդ, այո՛» (1936) և այլ պոեմների, «Արևից այրված Արևմուտքի քարերը» (1962), «Մեղր և աղ» (1963) փիլ. բանաստեղծությունների ժող–ների, «Աբրահամ Լինքոլն» (հ. 1–6, 1926–39) կենսագր. երկի:

Պուլիցերյան մրց. (1919,1940, 1951):

ՍԵՆ–ԴԵՆԻ (Saint–Denis), Ռեյունյոն կղզու (ֆրանս. տիրույթ) վարչ. կենտրոնը: Բն.՝ 137,2 հզ. (2010): Արտադրում և արտահանում են շաքար ու ռոմ:

ՍԵՆԵԳԱԼ (Sénégal), գետ Արմ. Աֆրիկայում: Բաֆինգ անվամբ սկիզբ է առնում Ֆուտա Ջալոն լ–զանգվածից: Բաֆինգի ակունքից երկ.՝ 1430 *կմ*, ավազանը՝ 441 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1500 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է մինչև Կաես ք.: Գետաբերանին է Սեն Լուի նվինգստ–ը:

ՍԵՆԵԳԱԼ, **Սենեգալի Հանրապետություն** (République du Sénégal), պետություն Արմ. Աֆրիկայում: Սահմանակից է Մավրիտանիային, Մալիին, Գվինեային և Գվինեա–Բիսաուին: Տարածքը՝ 196,7 հզ. *կմ*^{2}, բն.՝ 12,17 մլն (2009): Մայրաքաղաքը՝ *Դաքար*: Պետ. լեզուն՝ ֆրանս.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ Ազ: Հավատացյալների մեծ մասը մահմեդական է: Բաժանված է 14 վարչ. մարզերի: Անդամակցում է ՄԱԿ–ին, Աֆրիկ. միությանը: Տնտեսապես թույլ զարգացած երկիր է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 1,6 հզ. ԱՄՆ դոլար է (2005): Արտահանում է ձուկ, նավթամթերք, գետնանուշի յուղ, բանան ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթ, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ աֆրիկ. ֆրանկ:

Միջնադարում Ս. լրիվ կամ մասամբ մտել է Գանա, Մալի, Սոնգհայ պետությունների կազմի մեջ, նրա տարածքում առաջացել են մի շարք պետություններ: XI դ–ում Ս–ում տարածվել է մահմեդականություն: XV դ–ում Ս–ի տարածք են թափանցել պորտուգալացիները, որոնք արտահանել են փղոսկր, ոսկու ավազ ևն, զբաղվել ստրկավաճառությամբ: XVII–XIX դդ–ի ընթացքում Ս–ի տարածքը նվաճել է Ֆրանսիան, 1895–ին ներառել Ֆրանս. Արմ. Աֆրիկայի կազմի մեջ: 1958–ին Ս. դարձել է ինքնավար պետություն, 1960–ից՝ անկախ հանրապետություն՝ Ֆրանս. համագործակցության կազմում: 1982–89–ին Գամբիայի հետ կազմել է Սենեգամբիա համադաշնությունը: Անկախ Ս–ի 1–ին նախագահ է ընտրվել Լեոպոլդ Սեդար Սենգորը (1960–80), 2012–ից՝ Մակի Սալլը:

ՍԵՆԵԿԱ Լուկիոս Աննեոս (Seneca Lucius Annaeus, մ. թ. ա. մոտ 4–մ. թ. 65), հռոմեացի փիլ., քաղ. գործիչ, գրող: ***Ներոնի*** դաստիարակը (նրա հրամանով ինքնասպան է եղել): Ս–ի էկլեկտիկ. փիլ–յան մեջ ստոիցիզմը զուգակցված է այլ ուսմունքների տարրերի հետ: Ս. մշակել է գլխավորապես բարոյագիտ. խնդիրներ, որոնց ճիշտ լուծման դեպքում, ըստ նրա, ձեռք է բերվում ոգու հանգստություն և անդորրություն: Գրել է 12 ոչ մեծ և 3 մեծ աշխ–ներ («Նախախնամության մասին», «Ձայրույթի մասին», «Գթասրտության մասին» ևն), «Նամակներ Լուկիլիոսին» ժող–ը, ողբերգություններ («Էդիպ», «Մեդեա» ևն):

ՍԵՆԵԿԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, արքունի գործակալություն հին և միջնադար. Հայաստանում: Գործակալը սենեկապետն էր («պահապան և պետ սենեկի»): Պահպանել և հսկել է թագավոր. գանձերն ու շտեմարանները, դիվանատունը, դրոշը, կնիքը ևն, կազմակերպել արարողություններ: Թագավորի անունից ընդունել է դեսպանություններ, վարել բանակցություններ:

ՍԵՆԵՋ, ք. Արմ. Իրանում, Քուրդիստան օստանի վարչ. կենտրոնը: Բն.՝ 325 հզ. (2010): Կան սննդի, փայտամշակման, գորգագործության ձեռն–ներ: Հիմնադրվել է XVII դ–ի սկզբին:

ՍԵՆԵՔԵՐԻՄ, Հովհաննես Սենեքերիմ (ծ. թ. անհտ–1003), Փառիսոսի թագավոր՝ մոտ 958–ից: ***Սահակ Սևադայի*** որդին: Հորից ժառանգություն ստանալով Փառնես (Փառիսոս) գվռ–ը՝ հիմնադրել է թագավորություն (տես ***Փառիսոսի թագավորություն***), որը ճանաչել են Պարսկաստանն ու Բյուզանդիան:

ՍԵՆԵՔԵՐԻՄ Սևադյան (ծ. թ. անհտ–1094), Սյունիքի թագավոր՝ 1084–ից՝ Խաչենի տիրակալ ***Առանշահիկների*** տոհմից: Սյունիքի թագավորությունում հաստատել է նոր արքայատուն: Ս. դիվանագիտ. հաջողությունների է հասել սելջուկ Մելիքշահի (1072–92) արքունիքում, վերականգնել է ***Սյունիքի թագավորության*** ամբողջականությունը և անկախությունը:

ՍԵՆԵՔԵՐԻՄ–ՀՈՎՀԱՆՆԵՍ (ծ. թ. անհտ–1025), Վասպուրականի թագավոր՝ 968–

1021-ին՝ ***Արծրունիների*** տոհմից: ***Աբու-սահլ–Համազասպի*** որդին: Հոր մահից (968) հետո թագավորել է եղբայրների (2) հետ, իսկ 1003-ից՝ միանձնյա: Ս–Հ. ռազմաքաղ. ծանր իրավիճակում (երկիր են ներխուժել թուրք հրոսակախմբեր) ճարահայտյալ ընդունել է Բյուզանդիայի կայսր Վասիլ II-ի պարտադրած պայմանագիրը. կայսրությանը զիջել է Վասպուրականը և 1021-ին իր արքունիքով, մերձավորներով ու զորքով (մոտ 70–80 հզ. մարդ) տեղափոխվել ***Սեբաստիայի նահանգ***, որը ճանաչվել է Արծրունիների ժառանգ. տիրույթ, որտեղ իշխել է մագիստրոսի կոչումով:

ՄԵՆ–ԺԵՐՄԵՆԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 1919, ստորագրվել է սեպտ. 10-ին Սեն-Ժերմեն-ան-Լեում (Փարիզի մոտ)՝ ԱՀՊ-ում հաղթանակած երկրների և Ավստրիայի միջև: Վավերացրել է ***Ավստրո–Հունգարիայի*** կազմալուծումը, արգելել ***անշլյուսը***: Սահմանափակել է Ավստրիայի ՋՈՒ, պարտավորեցրել նրան վճարել ***ռեպարացիաներ***:

ՄԵՆ–ԺՅՈՒՍՏ (Saint–Just) Լուի (1767–1794), Ֆրանս. մեծ հեղ-յան գործիչ: Մ. ***Ռոբեսպիերի*** գինակիցը: 1792-ի սեպտ-ից՝ ***Կոնվենտի*** կազմում: Հաս. փրկության կոմիտեի անդամ: Կարևոր դեր է խաղացել ***յակոբինյան դիկտատուրայի*** քաղ-յան իրականացման մեջ: Մահապատժի են ենթարկել տերմիդորականները:

ՄԵՆ–ԺՈՆ ՊԵՐՍ (Saint–John Perse, Ալեքսի Լեժե, 1887–1975), ֆրանսիացի բանաստեղծ: Հեղինակ է «Անաբասիս» (1924), «Կողմնորոշիչներ» (1957), «Թռչուններ» (1963) պոեմների, «Տարագրություն» (1942), «Քամիներ» (1946) բանաստեղծ. շարքերի: Հայ. հրատարակվել են «Ծովեզերքներ» (1993) բանաստեղծությունների ժող-ը, «Գովեստներ: Անաբասիս» (1995) գիրքը: Նոբելյան մրց. (1960):

ՄԵՆԻՈՐ, սենյոր (ֆրանս.՝ seigneur, < լատ. senior – ավագ), հողի սեփականատեր ավատատիր. դարաշրջանում: Սովորաբար ավատ. հիերարխիայի (վասալիտետ) անդամ էր, դրանով իսկ «Ս.» հասկացությունը նեղ իմաստով նշանակվել է նաև վասալների խմբի տեր: Խոշոր տարածքների գերագույն Ս. կոչվել է սյուզերեն:

ՄԵՆԿԵՎԻՉ (Sienkiwich) Հենրիկ (1846–1916), լեհ գրող: Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. ակադ. (1914): Հեղինակ է «Հանիա» (1876, հայ.՝ 1960), «Երաժիշտ Եանկօն» (1880, հայ.՝ 1899) և այլ վիպակների, «Հրով և սրով» (1883–84, հայ.՝ հ. 1–4, 1906–07), «Ձրիեղեղ» (1884–86, հայ.՝ 1913), «Պան Վոլոդիյովսկի» (1887–88, հայ.՝ 1914) եռերգության, «Յո՛ երթաս: Վէպ Ներոնի ժամանակից» (1894–96, հայ.՝ 1898), «Խաչակիրներ» (1897–1900, հայ.՝ 1957) պատմավեպերի, «Առանց դաւանանքի» (1889–90, հայ.՝ 1911), «Պոլոնեցկիների ընտանիքը» (1893–94) հոգեբ. վեպերի, նաև նովելների: Հայ. հրատարակվել են նաև «Փարոսի վերայ» (1892), «Դէպի Աթէնք» (1896), «Գնանք նորա յետևից» (1896), «Եղիր օրհնուած» (1893), «Հաղիկների առաջնորդը» (1928), «Բարթեկ հաղթողը» (1944), «Ամերիկյան նովելներ» (1954) և այլ գործեր: Նոբելյան մրց. (1905):

ՄԵՆ–ՄԱՐՏԵՆ (Saint–Martin) Անտուան Ժան (1791–1832), ֆրանսիացի հայագետ: «Պատմական և աշխարհագրական հիշատակություններ Հայաստանի մասին» (հ. 1–2, 1818–19) աշխ-յան մեջ նկարագրել է հայոց լեզուն, ներկայացրել Հայաստանի պատմությունն ու աշխարհագրությունը, կազմել հայ իշխանների ժամանակագրությունը, անդրադարձել է հայկ. առակներին, հայ. ձեռագրերին:

ՄԵՆ–ՄԱՐՏԵՆ Լուի Կլոդ (1743–1803), ֆրանսիացի միստիկ փիլ.: Բանավիճել է լուսավորիչների հետ, XVIII դ-ի ֆրանս. հեղ-յունը մեկնաբանել է որպես «աստվածային դատաստանի» նախախնամություն: Որոշակի ազդեցություն է թողել գերմ. ռոմանտիզմի և ռուս. մասոնության վրա:

ՄԵՆՅԱԿԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐ, բնակարաններում, հաս. և արտադր. շինություններում գեղազարդիչ ձևավորման և սան. վիճակի բարելավման համար ածեցվող բույսեր: Հայտնի է մոտ 300 տեսակ: Շինություններում կլանելով փոշին՝ Ս. բ. փոխում են օդի կազմը, մեղմում արևի լուսավորությունը, նվազեցնում ջերմությունը: Մի շարք Ս. բ. թողնում են ոչ ցանկալի ազդեցություն, որոշ մասը կարող է առաջացնել ալերգ. ռեակցիա ևն:

ՄԵՆՅԱԿԱՅԻՆ ՃԱՆՃ, երկթևանիների ընտանիքի միջատ: Երկ.՝ 5–9 *մմ*: Թրթուրներն ապրում են կենցաղ. թափոնների, գոմաղբի մեջ: Մի շարք հիվանդությունների (առավելապես՝ աղիների) հարուցիչների փոխանցողներ են:

ՄԵՆՅԻ (Segni) Անտոնիո (1891–1972), Իտալիայի նախագահ՝ 1962–64-ին, Իտալիայի ՔԴԿ առաջնորդներից: 1955–57 և 1959–60-ին՝ Կառ-յան ղեկ.:

ՄԵՆՆԵԹ (Sennett) Մաք (1880–1960), ամերիկացի կինոռեժ.: Կատակերգ. ժանրի նախահայրն ամերիկ. կինոյում: 1912-ին հիմնադրել է «Քիսթոունն» սեփ. կինոընկ-ը, որտեղ ստեղծագործ. առաջին քայլերն է կատարել Չ. ***Չապլինը***: Նկարահանել է հետապնդումներով, ծեծկռտոցներով, ակրոբատիկ. տարբեր հնարքներով կարճամետրաժ ֆիլմերի շարք:

ՄԵՆՈՒ, մոն-քմերյան ժողղ-ների (սեմայ, յախ խուտ կամ ջախուտ, լանոխ, տեմոկ, սեմոկ բերի, բիսիկ, տեմնաբ) խումբ Մալայզիայում (հիմնականում՝ Պերակ, Կելանթան և Պահանգ նհնգ-ների ներքին շրջաններում): Թվաքանակը՝ 40 հզ. (2010):

ՄԵՆ–ՍԱՆՍ (Saint–Saëns) Կամիլ (1835–1921), ֆրանսիացի կոմպոզիտոր, դաշնակահար, դիրիժոր, երաժշտ. քննադատ: Ազգ. երաժշտ. ընկ-յան (1871) հիմնադիրներից: Հեղինակ է օպերաների («Սամսոն և Դալիլա», 1876, ևն), սիմֆոնիայի (երգեհոնի հետ, 1886), «Սահվան պարեր» (1874) սիմֆ. պոեմի, «Ինտրոդուկցիա և ռոնդո կապրիչչիոզոյի» (1863), ջութակի և նվագախմբի, դաշնամուրի և նվագախմբի, թավջութակի և նվագախմբի կոնցերտների, «Կենդանիների կառնավալ» (1886) գործիք. սյուիտի և այլ գործերի:

ՄԵՆ–ՍԻՄՈՆ (Saint–Simon) Կլոդ Անրի դը Ռուվրուա (1760–1825), ֆրանսիացի մտածող, ուտոպիստ-սոցիալիստ: Պատմության զարգացման շարժիչ ուժը համարել է գիտ-յունը, բարոյականությունը և կրոնը: «Նոր քրիստոնեություն» (1825) երկում բանվոր դասակարգի ազատագրումը հայտարարել է նպատակ, որին, ըստ նրա, կարելի է հասնել «նոր» կրոնի միջոցով («բոլոր մարդիկ եղբայրներ են»):

ՄԵՆՍՈՒԱԼԻԶՄ (լատ.՝ sensus – ընկալում, զգայություն), իմացաբանության ուղղություն, ըստ որի՝ զգայություններն ու ընկալումը հավաստի ճանաչողության հիմն. և գլխ. ձևերն են: Ս. հակադրվում է ***ռացիոնալիզմին***: Ըստ Ս-ի հիմն. սկզբունքի՝ «բանականության մեջ չկա մի բան, որ չլինի զգայություններում»: Այն ընդունել են Պ. Հասենդին, Թ. Հոբսը, Ջ. Լոկը, Կ. Հելվեցիոսը, Դ. Դիդրոն, Պ. Հոլբախը, ինչպես նաև Ջ. Բերկլին, Դ. Հյումը:

ՄԵՆՏ ԴՅՈՐԴԻ (Szent Györgyi) Ալբերտ (1893–1986), հունգար կենսաքիմիկոս, կենսաէներգետիկայի հիմնադիրներից: 1947-ից՝ ԱՄՆ-ում: ԽՍՀՄ ԳԱ արտ. թղթ. անդամ (1947): Աշխ-ները վերաբերում են կենսբ. օքսիդացմանը, մկան. կծկման մեխանիզմներին: Նոբելյան մրց. (1937):

ՄԵՆՏ ԷԹԻԵՆ (Saint–Etienne), ք. Ֆրանսիայի կենտր. մասում, Լուարա դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 170 հզ. (2010):

ՄԵՆՏ ԼՅՈՒՍԻԱ (Saint Lucia), պետություն Կարիբյան ծովի Մենտ Լյուսիա կղզում՝ Փոքր Անտիլյան կղզեխմբի հվ–արլ-ում: Տարածքը՝ 616 *կմ*², բն.՝ 160,3 հզ. (2009), հիմնականում ֆրանսիացիներ, կրեոլներ–սենտլյուսցիներ են: Հավատացյալները հիմնականում կաթոլիկ են: Պետ. լեզուն՝ անգլ.: Մայրաքաղաքը՝ Կաստրի: Բրիտ. համագործակցության անդամ է: Պետության գլուխը՝ Մեծ Բրիտանիայի թագուհին է, որին ներկայացնում է գեներահանգապետը, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը (Սենատը և Ժողովի պալատը): Տնտ-յան հիմքը զբոսաշրջությունն է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 10,9 հզ. ԱՄՆ դոլար է: Արտահանում է բանան, կոպրա, կոկոսի յուղ, ցիտրուսներ, ռոմ, ներմուծում լայն սպառման ապրանքներ, վառելանյութ, սարքավորումներ, պարեն:

Դրամ. միավորը՝ արևելակարիբ. դոլար: Կղզին հայտնաբերել է Ք. Կոլումբոսը 1502-ին: XVII դ-ի կեսերից Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի մրցակցության տարածք էր: 1814-ից՝ Մեծ Բրիտանիայի տիրույթ: 1958–62-ին ներառվել է Վեստ Ինդիա դաշնության մեջ: 1967-ին ստացել է «Մեծ Բրիտանիային միացված պետության» կարգավիճակ: 1979-ին հռչակվել է անկախ պետություն:

ՄԵՆՏ ԼՈՒԻՍ (Saint Louis), ք. ԱՄՆ Միսսուրի նհնգ-ում՝ Միսսիսիպի գետի ափին: Բն.՝ 350 հզ., Մեծ Սենտ Լուիս ագլոմերացիայում (նրա արլ. մասն Իլինոյս նհնգ-ում է)՝ 2,7 մլն (2010): Տրանսպորտ. հանգույց է: Ունի օդանավակայան: Խոշոր առևտրաֆին. և գիտ. կենտրոն է: Զարգացած է ԳՀՓԿԱ՝ կենսատեխնոլոգիայի (այդ թվում՝ մշակաբույսերի գենետիկոռեն մոդիֆիկացված սերմեր) և բժշկության բնագավառներում: Կա թանգարան: Ս. Լ-ում են անցկացվել 3-րդ օլիմպ. խաղերը (1904): Հայտնի է «Ուեյնրայթ Բիլդինգ» երկնաքերը (XIX դ.): Հիմնադրվել է 1764-ին:

ՄԵՆՏ ԿԱՏԱՐԻՆՍ (Saint Catharines), ք. Կանադայի հվ–արլ-ում՝ Ուելլենդ ջրանցքի ափին՝ Օնտարիո պրովինցիայում: Բն.՝ 314,6 հզ. (Նիագարա ագլոմերացիայում, 2010):

ՄԵՆՏ ՀԵԼԵՆՍ (Saint Helens), ք. Անգլիայում՝ Մանչեստր և Լիվերպուլ ք-ների միջև: Բն.՝ 102 հզ. (2010):

ՄԵՆՏ ՉԱՌԼԶ (Saint Charles), հրվանդան Լաբրադոր թ–կղզում (Կանադա), Հս. Ամերիկա մայրցամաքի արլ. ծայրակետը (հս. լայն-յան՝ 52°24′ և արմ. երկայն-յան՝ 55°4′):

ՍԵՆՏ ՊԻՏԵՐՍԲԵՐԳ (Saint Petersburg), ք–առողջարան ԱՄՆ Ֆլորիդա նահց–ում: Բն.՝ 260 հզ. (2016): Ունի միջազգ. օդանավակայան:

ՍԵՆՏ ՊԱՈԼ (Saint Paul), ք. ԱՄՆ Մինեսոթա նահց–ում, Ռամսի մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 300,8 հզ. (2015): Նվինգստ՝ Մինեսոթա գետի ափին:

ՍԵՆՏ ՋՈՆ (Saint John), գետ ԱՄՆ–ում և Կանադայում: Երկ.՝ 724 *կմ*, ավազանը՝ 55,4 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1130 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է ֆրեդերիկտոն ք–ից:

ՍԵՆՏ ՋՈՆՍ (Saint John's), *Անտիգուա և Բարբուդա* պետության մայրաքաղաքը: Բն.՝ 153,8 հզ. (2010): Նվինգստ՝ Ատլանտ. օվկ–ի ափին: Ունի օդանավակայան:

ՍԵՆՏ ՋՈՐՋԵՍ (Saint George's), Գրենադայի մայրաքաղաքը: Բն.՝ 5,2 հզ. (2010): Նվինգստ է: Ունի օդանավակայան:

ՍԵՆՏ ՎԻՆՍԵՆՏ (Saint Vincent), հրաբխ. կղզի Կարիբյան ծովում՝ Հողմակողմ կղզիների խմբում (Փոքր Անթիլյան կղզեխումբ): Սենտ Վինսենտ և Գրենադիններ պետության առավել մեծ մասը: Տարածքը՝ 344 *կմ*^{2}, բարձր.՝ մինչև 1234 *մ* (Սուֆրիներ հրաբուխ):

ՍԵՆՏ ՎԻՆՍԵՆՏ ԵՎ ԳՐԵՆԱԴԻՆՆԵՐ (Saint Vincent and Crenadines), պետություն Կարիբյան ծովի արլ–ում՝ Սենտ Վինսենտ և 32 փոքր կղզիներում: Տարածքը՝ 389 *կմ*^{2}, բն.՝ 103 հզ. (2013): Մայրաքաղաքը՝ *Քինգսթաուն*: Պետ. լեզուն՝ անգլ.: Կառավարման ձևը՝ միապետ.: Պետության գլուխը Մեծ Բրիտանիայի թագուհին է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Հավատացյալների մեծ մասը քրիստոնյա է, հիմնականում՝ անգլիկան: Բաժանված է 6 վարչ. համայնքների: Անդամակցում է ՄԱԿ–ին, Կարիբյան ընկերակցությանը, Ազգերի համագործակցությանը: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 11,2 հզ. ԱՄՆ դոլար է (2015): Արտահանում է մեքենաներ, սննդամթերք, էլեկտրոն. արտադրանք, ծխախոտ, կոկոսի յուղ, ներմուծում սննդամթերք, մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, վառելանյութ ևն: Դրամ. միավորը՝ արևելակարիբ. դոլար:

Սենտ Վինսենտ կղզին հայտնաբերել է Ք. Կոլումբոսը 1498–ին: Մինչև XVII դ. եղել է Իսպանիայի տարածք: 1783–ին Վերսալի պայմանագրով անցել է Մեծ Բրիտանիային, 1969–ին ստացել Մեծ Բրիտանիային միավորված պետության կարգավիճակ, իսկ 1979–ին ձեռք է բերել անկախություն:

ՍԵՆՏ ՔԻՏՍ ԵՎ ՆԵՎԻՍ, Սենտ Քիտսի և Նևիսի Դաշնություն (Federation of Saint Kitts and Nevis), պետություն Կարիբյան ծովի արլ–ում՝ Սենտ Քիտս և Նևիս կղզիներում: Տարածքը՝ 261 *կմ*^{2}, բն.՝ 50 հզ. (2012): Մայրաքաղաքը՝ *Բասթեր*: Պետ. լեզուն՝ անգլ.: Կառավարման ձևը՝ միապետ.: Պետության գլուխը Մեծ Բրիտանիայի թագուհին է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը (ԱԺ): Հավատացյալների մեծ մասը բողոքական և մեթոդական է: Բաժանված է 14 վարչ. օկրուգների: Անդամակցում է ՄԱԿ–ին, Կարիբյան ընկերակցությանը, Ազգերի համագործակցությանը: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 15,2 հզ. ԱՄՆ դոլար է (2015): Արտահանում է մեքենաներ, սննդամթերք, էլեկտրոն. արտադրանք, ծխախոտ, կոկոսի յուղ, ներմուծում սննդամթերք, մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, վառելանյութ ևն: Դրամ. միավորը՝ արևելակարիբյան դոլար:

Կղզիները հայտնագործել է Ք. Կոլումբոսը 1493–ին: 1628–ին անգլիացիները գաղութացրել են Նևիս, 1783–ից՝ Սենտ Քիտս կղզիները: 1882–ին Սենտ Քիտս, Նևիս և Անգիլյա կղզիները կազմել են դաշնություն, որը 1967–ին ստացել է Մեծ Բրիտանիային միավորված պետության կարգավիճակ, իսկ 1983–ի սեպտ–ին՝ անկախություն:

ՍԵՆՏ ՔԼԵՐ ԴԵՎԻԼ (Sainte–Claire Deville) Անրի Էթիեն (1818–1881), ֆրանսիացի քիմիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1869): Աշակել է այյումինի ստացման առաջին արդ. եղանակը (1854), պլատինի մաքրման եղանակներ (1855–59), ուսումնասիրել է ջերմ. դիսոցումը (1857–ից): Ստացել է (1872) իրիդիումի համաձուլվածքը պլատինի հետ, որից պատրաստվել են *մ*–ի և *կգ*–ի միջազգ. չափանմուշները:

ՍԵՆՏԱԳՈԹԱՅ (Szentágothai) Յանոշ (1912–1994), հունգար ֆիզիոլոգ, ֆունկցիոնալ նյարդահյուսվածաբանության գիտ. դպրոցի հիմնադիր: ՌԳԱ (1976) և ՌԲԳԱ (1982) արտ. անդամ, Հունգարիայի ԳԱ նախագահ (1977–85): Հետազոտել է նյարդ. կենտրոնների կառուցվածքը և գլխուղեղի ֆունկցիաների նյարդահումորալ կարգավորման մեխանիզմները:

ՍԵՆՏ–ԷՔՍՅՈՒՊԵՐԻ (Saint–Exupéry) Անտուան դը (1900–1944), ֆրանսիացի գրող, օդաչու: Հեղինակ է օդաչուների կյանքի մասին «Հարավային փոստատարը» (1929), «Մարդկանց երկիրը» (1939, հայ.՝ 1961), «Ռազմական օդաչու» (1942) վիպակների, «Գիշերային թռիչք» (1931, հայ.՝ 1961) վեպի (Ֆրանսիայի «Ֆեմինա» գր. մրց.), «Միջնաբերդ» (հրտ.՝ 1948, անավարտ) փիլ. երկի: Ս–Է–ին համաշխ. հռչակ է բերել «Փոքրիկ իշխանը» (1943, հայ.՝ 1961) այլաբան. հեքիաթ–վիպակը, որն առանձնանում է համամարդկային գաղափարներով, նուրբ հումորով, թախծոտ քնարականությամբ: Զոհվել է հետախուզ. թռիչքի ժամանակ:

ՍԵՆՏԻՄԵՆՏԱԼԻԶՄ (ֆրանս.՝ sentiment – զգացմունք, զգայականություն), գեղագիտ. ուղղություն XVIII դ–ի 2–րդ կես–XIX դ–ի սկզբի գրկ–յան մեջ և արվ–ում: Սկզբնավորվել է արևմտաեվրոպ., ամերիկ. իրականության մեջ կլասիցիստ. և լուսավոր. ռացիոնալիզմի (տես *Լուսավորականություն*) ճգնաժամի պայմաններում: Ս. «մարդու բնության» գերհատկանիշը համարել է ոչ թե բանականությունը, այլ զգացմունքը: Կլասիցիզմի արծարծած համազգ. խնդիրների փոխարեն առաջադրել է մարդու կյանքի ու երջանկության, անհատի իրավունքի հարցերը: Ս. ազդել է նախառոմանտիզմի գրկ–յան և արվ–ի վրա. մեծապես նպաստել է *ռոմանտիզմի* առաջացմանը և զարգացմանը: Ս–ի ներկայացուցիչներից են Ջ. Թոմսոնը, Ս. Ռիչարդսոնը, Լ. Մտեռնը, Օ. Գոլդսմիթը, Ու. Կուպերը, Մ. Մորավյովը, Ի. Բոգդանովիչը և ուր.: Հայ գրկ–յան մեջ Ս. ամբողջ. արտահայտություն չի ունեցել: Հայկ. կլասիցիզմից դեպի Ս. և ռոմանտիզմ անցման շրջանի բանաստեղծ է Հ. Ալամդարյանը: Ս–ի որոշ տարրեր նկատելի են Ս. Թաղիադյանի, Ղ. Ալիշանի, նաև Խ. Աբովյանի ստեղծագործություններում:

ՍԵՆՏՕ (CENTO, անգլ.՝ Central Treaty Organization), տես *Կենտրոնական պայմանագրի կազմակերպություն*:

ՍԵՆՈՒՍԵՐՏ I, Եգիպտոսի փարավոն, XII հարստության (Միջին թագավորություն) 2–րդ թագավորը՝ մ. թ. ա. 1970–34–ին: Նվաճող. քաղ–յուն է վարել հվ–ում, Հս. Նուբիայում, առևտր. ու դիվանագիտ. կապեր հաստատել Ասորիքի և Պաղեստինի հետ:

ՍԵՆՈՒՍԵՐՏ II, Եգիպտոսի փարավոն, XII հարստության 4–րդ թագավորը, կառավարել է մ. թ. ա. 1896–84–ին: *Սենուսերտ III*–ի հայրը:

ՍԵՆՈՒՍԵՐՏ III, Եգիպտոսի փարավոն, XII հարստության 5–րդ թագավորը՝ մ. թ. ա. 1884–մոտ 1849–ին, *Սենուսերտ II*–ի որդին: Ամրապնդել է Եգիպտոսի տիրապետությունը Հս. Նուբիայում և պետության սահմանը հասցրել մինչև Նեղոսի 2–րդ սահանքը, որտեղ (արմ. և արլ. ափերին) կառուցել է հզոր ամրոցներ: Արշավել է մինչև Նեղոսի 3–րդ սահանքը:

ՍԵՆՈՒՖՈ, գուր ժողդ–ների խումբ Կոտդ'Իվուարում (1,9 մլն, 2010), Հվ. Մալիում (1,6 մլն) և Բուրկինա Ֆասոյում (220 հզ.): Լեզուն՝ սենուֆո: Պահպանել են ավանդ. հավատալիքները, կան սուննի մահմեդականներ:

ՍԵՇԵ (Séchehaye) Ալբեր (1870–1946), շվեյցարացի լեզվաբան: Ժնևի լեզվաբ. ընկ–յան նախագահ (1941–46): Ֆ. դը *Սոսյուրի* աշակերտը: Հեղինակ է ընդհ. լեզվաբ–յանը (լեզու և մտածողություն, լեզվի մեջ արհեստ. և սոցիալ. գործոններ, լեզվ. նշանի բնույթը ևն) և քերակ–յանը (այդ թվում՝ ֆրանս–ի) վերաբերող աշխ–ների:

ՍԵՉԵՆՈՎ, Իվան Միխայլովիչ (1829–1905), ռուս. բնախույզ–մատերիալիստ, ռուս. ֆիզիոլոգ. դպրոցի հիմնադիր և հոգեբ–յան մեջ բնազիտ. ուղղության ստեղծողը: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. (1869), պատվ. (1904) անդամ: Հիմնավորել է գիտակց. և անգիտակց. գործունեության ռեֆլեքս. բնույթը, բացահայտել է, որ հոգեկան երևույթների հիմքում ընկած են ֆիզիոլոգ. կենսընթացներ, որոնք կարելի է ուսումնասիրել օբյեկտիվ մեթոդներով: Բացահայտել է կենտր. արգելակման երևույթները, նյարդ. համակարգում գումարման (սումմացիայի) երևույթը, հաստատել ԿՆՀ–ում ռիթմիկ կենսաէլ. շարժընթացները, հիմնավորել նյութափոխանակության դերը դրդման իրականացման մեջ: Հետազոտել է արյան շնչառ. ֆունկցիան:

ՍԵՊԱԳԻՐ, սեպաձև գծիկների զուգակցությամբ դաջվածքի միջոցով գրության եղանակ: Գրել են կավե տախտակների, քարակոթողների և ժայռերի վրա: Օգտագործել են Առաջավոր Ասիայում: Հայտնի է մ. թ. ա. III հզ–ամյակի սկզբներից. շումերները (Հվ. Միջագետք) իրենց *գաղափարագրերի* գծերն ուղղել են, հատման կետերը փոխարինել սեպիկներով՝ դարձնելով Ս–եր: Հայտնաբերվել են նաև ողջ Հայաստանի և հարակից շրջանների տարածքում, վերաբերում են Վանի թագավորների նվաճումներին (մ. թ. ա. IX–VII դդ.): Հայագիտ–յան մեջ ուրարտ. և հին պարսկ. արձանագրությունները ընդունված է անվանել Ս., իսկ մյուսները՝ բևեռագրեր:



ՍԵՊԱԳԻՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԲՆԱԳԻՐԵՐ, Հին Բաբելոնի և Ասորեստանի մաթ. սեպագիր բնագրեր՝ գրված կավե սալիկների վրա. ընդգրկում է մ. թ. ա. II հզ–ամյակի սկզբից մինչև մ. թ. ա. I դ.: Հայտնաբերվել են նաև Վանի (Ուրարտուի) թագավորության ժամանակաշրջանի մաթ. սեպագիր արձանագրություններ, որոնք արմատապես տարբերվել են եգիպտականից: Դրանցով հնարավոր էր գրել բավական մեծ ամբողջ և կոտորակ. թվեր: Ուրարտացիները հեշտությամբ կատարել են նաև բավականաչափ մեծ թվերի գումարման և այլ գործողություններ: Այդ է հավաստում, օր., 1916-ին Վանում Հ. Օրբելու հայտնաբերած սեպագիր արձանագրությունը Մարդուրի Բ-ի արշավանքների մասին, որտեղ գրառված են գրված քաղաքների, գերիների, ավար առած անասունների քանակները՝ առանձին-առանձին, ինչպես և դրանցից յուրաքանչյուրի ընդհ. քանակը (գումարը) 3 արշավանքների ժամանակ: Հին Հայաստանի թվաբ. մշակույթն Ուրարտ. այդ մշակույթի անմիջական ժառանգորդն է:

ՍԵՊԱՐԱՏ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ (լատ.՝ separatus – առանձին, անջատ), **անջատ հաշտություն**, որը միակողմանիորեն հակառակորդի հետ կնքում է դաշինքի անդամ պետություններից մեկը՝ առանց դաշնակից պետությունների գիտության ու համաձայնության: Տերմինն առաջին անգամ գործածվել է ԱՀՊ-ի ժամանակ:

ՍԵՊԻԱ (հուն.՝ sepia – թանաքաձուկ), 1. բաց դարչնագույն ներկանյութ. ստացվում է ծով. փափկամարմինների թանաքապարկից: Օգտագործել են եվրոպացի նկարիչները XVIII դ-ի կեսից՝ գրչով և վրձինով նկարելիս: XX դ-ում Ս. փոխարինվել է ջրաներկով: 2. Ս-ի տեխնիկայով կատարված գրաֆիկ. ստեղծագործություն:

ՍԵՊԻՐ (Sapir) Էդուարդ (1884–1939), ամերիկացի լեզվաբան, ազգագրագետ (ծագումով՝ հրեա): ԱՄՆ-ի լեզվաբ. (1933) և մարդաբ. (1938) ընկ-ների նախագահ: Հեղինակ է ընդհ. լեզվաբ-յան խնդիրներին, ամերիկ. հնդկացի. լեզուներին վերաբերող աշխ-ների: Զգալի ազդեցություն է թողել ժամանակակից ամերիկ. կառուցվածք. լեզվաբ-յան զարգացման վրա, տիպաբանորեն դասակարգել աշխարհի լեզուները:

ՍԵՊՍԻՍ (հուն.՝ sepsis – նեխում), տես *Արյան վարակում*:

ՍԵՊՏԱԿՈՐԴ, **քառահնչյուն**, ակորդ՝ կազմված 4 տարբեր հնչյուններից, որոնք դասավորված են տերցիաների հաջորդականությամբ. հիմքի ու գագաթի միջև տարածությունը կազմում է սեպտիմա (որտեղից էլ՝ անվանունը) ինտերվալ: Ունի 3 շրջվածք (կվինտսեքստակորդ, տերցկվարտակորդ և սեկունդակորդ):

ՍԵՊՏԵՏ (լատ.՝ septem – յոթ), յոթնյակ, 7 երաժշտից բաղկացած գործիք. կամ վոկալ անսամբլ, նաև այդ անսամբլի համար գրված երաժշտ. ստեղծագործություն:

ՍԵՊՏԻՄԱ (լատ.՝ septima – յոթերորդ), երաժշտության մեջ հնչյունաշարի որևէ աստիճանի և դրանից հաշվված 7-րդ աստիճանի հարաբերակցությունը: Տես նաև *Ինտերվալ*:

ՍԵՊՏԻՄՈՆՅԻՈՒՄ, Հռոմի 7 բլուրները՝ Ավենտին, Էսկվիլին, Կվիրինալ, Կապիտոլիում, Պալատին, Վիմինալ, Ցելիում, որոնք հավերժ քաղաքի հիմնադրման հիմքն են և նրա հիմն. խորհրդանիշներից:

ՍԵՊՏԻՄՈՍ ՍԵՎԵՐՈՍ Լուկիոս (Septimius Severus, 146–211), Հռոմի կայսր՝ 193-ից: *Սևերոսների* հարստության հիմնադիրը: Վարել է հետևող. հակաեներակուտ. քաղ-յուն: Ամրացրել է կայսրության սահմանները: Վաղարշապատից հանելով (198-ին) հռոմ. կայազորը՝ Հայոց արքա Վաղարշ Բ-ին թույլատրել է մեծացնել հայկ. զորքերի թվաքանակը, որի պահպանման համար Հռոմն ամենամյա զգալի գումար էր տրամադրելու:

ՍԵՊՏՈՐԻՈՆԶՆԵՐ, բույսերի հիվանդություններ: Հարուցիչները մակաբույծ սնկերն են: Հատկապես վտանգավոր են հացահատիկ. մշակաբույսերի, լոլիկի, հաղարճենու ևնի Ս.: Տերևների վրա առաջանում են սպիտակ (կենտրոնում) և կարմիր (ծայրերին) բծեր: Ընձյուղները չորանում են, ցողունները գորշանում և ծռվում:

ՍԵՊՈՒՀ (Ներսեսյան Արշակ, 1872–1940), ազգ–ազատագր. շարժման գործիչ, ֆիդայի, զորավար: 1903-ին Թորգոմի «Մրրիկ» խմբի կազմում անցել է Սասուն, մասնակցել 1904-ի *Սասունի ապստամբությանը*: ԱՀՊ-ի սկզբին 21-հոգանոց խմբով միացել է *Անդրանիկին*, եղել է 1-ին կամավոր. գնդի 2-րդ վաշտի հրամ.: 1916-ին Երզնկայում *Մուրադ Սեբաստացու* հետ ձեռնարկել է «Մեկ հայ, մեկ ոսկի» նախաձեռնությունը, հավաքել բազմաթիվ հայ որբերի: Մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին (1918), օգնել Բաքվում կռվող հայկ. ուժերին: Մայիսյան ապստամբության (1920) ճնշման ժամանակ՝ կառավար. զորքերի հրամ.: Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ վտարանդի:

ՍԵՊՈՒՀ ԼԵՌԱՆ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՎԱՆՔ, *Հանգիստ Լուսավորչի վանք*, ճարտ. համալիր Բարձր Հայք նահանգի Դարաղանյաց և Եկեղյաց գավ-ների սահմանին՝ Սեպուհ լ-ան վրա: 921-ին Հովհաննես Ե Դրասխանակերտցին կառուցել է վանքի Սբ Գրիգոր Լուսավորիչ դամբարան-եկեղեցին, որը բաղկացած է կիսաշրջանաձև խորանով և գմբեթով բուն դամբարանից, կից եռանավ բազիլիկից: Հս-արլ-ում Սբ Ամենափրկիչ եկեղեցին է, որից հվ-արլ. Մանեի քարանձավն է (Մանյա այրը): 1895-ին վանքը լքվել է, 1939-ին նկատելիորեն ավերվել երկրաշարժից:

ՍԵՊՈՒՀ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Հայկ. լ-աշխարհում՝ Ներքին Տավրոսի լ-համակարգում, Չիմեն լ-շղթայի հվ. լ-բազուկը: Երկ.՝ 35 *կմ*, առլգն բարձր.՝ 3030 *մ* (Սեպուհ լ., այժմ՝ Ղարադաղ):

ՍԵՊՈՒՀՆԵՐ, ազնվականության կրտսեր դաս վաղ ավատատիր. Հայաստանում: Ս. կոչվել են *նախարարի* ու նրա տոհմի որդիները: Ենթարկվել են նախարարին, կատարել զինվ. ծառայություն նրա զորամասում և վասալ. այլ պարտականություններ: Կորցնելով իր նախն. սոցիալ. իմաստը՝ «սեպուհ» բառը գործածվել է ազնվական, ասպետ, ազատ, պայազատ նշանակությամբ:

ՍԵՋՎԻԿ (Sedgwick) Ադամ (1785–1873), անգլիացի երկրաբան: Աշխ-ները վերաբերում են Մեծ Բրիտանիայի, Բելգիայի, Գերմանիայի պալեոզոյան նստվածքների շերտագրությանը: Առանձնացրել է քեմբրիի (1835) և դևոնի (Ռ. *Մուրչիսոնի* հետ, 1833) համակարգերը:

ՍԵՌ (կենսբ.), ժառանգ. և ձևաբանա-ֆիզիոլոգ. առանձնահատկությունների ամբողջություն, որն ապահովում է օրգանիզմի սեռ. բազմացումը: Օրգանիզմի արական կամ իգական Ս-երի տարբերակումը պայմանավորված է գենետիկորեն հատուկ սեռ. քրոմոսոմներով:

ՍԵՌԱԿԱՆ ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ, *ռեվերսիաներ*, սեռ. հակման ուղղվածության հիվանդագին խանգարումներ (օր.՝ *զոոֆիլիա*) կամ այն բավարարելու եղանակների հիվանդագին խանգարումներ (օր.՝ *սադիզմ*):

ՍԵՌԱԿԱՆ ԲԱԶՄԱՑՈՒՄ, բազմացման ձև, որի դեպքում նոր օրգանիզմը սովորաբար զարգանում է իգական և արական սեռ. բջիջների միաձուլումից (բեղմնավորում) առաջացած զիգոտից: Բնորոշ է բոլոր *էուկարիոտներին*, հաստատված չէ *պրոկարիոտների* մոտ: Ս. բ. է նաև կուսածնությունը (պարթենոգենեզ):

ՍԵՌԱԿԱՆ ԲՋԻՋՆԵՐ, տես *Գամետներ*:

ՍԵՌԱԿԱՆ ԳԵՂՁԵՐ, **գոնադներ**, մարդու և կենդանիների սեռ. բջիջներ (ձվաբջիջներ և սերմնաբջիջներ), նաև սեռ. հորմոններ արտադրող օրգաններ: Արական Ս. գ. ամորձիներն են, իգականը՝ ձվարանները, խառը Ս. գ. հերմաֆրոդիտային են (բնորոշ են որոշ որդերի, փափկամարմինների):

ՍԵՌԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, բժշկ. և մանկավարժ. միջոցառումների համակարգ, որը նպատակաուղղված է երեխաների, դեռահասների և երիտասարդների շրջանում սեքսուալ հարցերի նկատմամբ խելամիտ, առողջ վերաբերմունքի դաստիարակմանը: Ս. դ-յան խնդիրն ամող սերնդի ներդաշնակ զարգացմանը, մանկածնության ֆունկցիայի լիարժեք ձևավորմանը և ամուսնության ու ընտանիքի ամրապնդմանը նպաստելն է: Ս. դ. ընտանիքում, նախադպրոց. և այլ հիմնարկներում իրականացվող ուսումնադաստիարակչ. միջոցառումների բաղկացուցիչ մաս է:

ՍԵՌԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, կենդանիների բնական ընտրության ձև, որի հիմքում ընկած է մեկ սեռի (առավելապես՝ արական) անհատների մրցակցությունը հակառակ սեռի անհատներին գրավելու համար, որը հանգեցնում է ավելի քիչ հարմարվածների մոտ սերունդ տալու նվազման: Ս. ը-յան արդյունքում կենդանիների որոշ տեսակների մոտ առաջանում են երկրորդ. սեռ. հատկանիշներ (զուգավորման վառ գունավորում, եղջյուրներ ևն):

ՍԵՌԱԿԱՆ ԿՅԱՆՔ, կենսբ., հաս., մարմն., հոգեկան և սոցիալ. շարժընթացների հարաբերությունների ամբողջություն, որոնց միջոցով բավարարվում է *սեռական հակումը*:

ՍԵՌԱԿԱՆ ՀԱԿՈՒՄ, **լիբիդո** (լատ.՝ libido – հակում, ցանկություն, մղում), սեռ. ցանկություն, որը, ըստ Զ. *Ֆրեյդի*, նշանակում է առավելապես անգիտակցական սեքսուալ հակումներ, որոնք (ի տարբերություն ինքնապահպանման ձգտման) ունակ են դուրսմղման և բարդ ձևափոխությունների ևն: Կ. Գ. Յունգն այն դիտել է որպես հոգեկան էներգիա՝ ընդհանրապես, հոգեկանի մետաֆիզ. յուրատեսակ սկզբունք:

ՍԵՌԱԿԱՆ ՀԱՍՈՒՆԱՑՈՒՄ, մարդու և կենդանիների անհատ. զարգացման շրջան, որի ընթացքում օրգանիզմը ֆիզիոլոգիապես հասունանում է և ձեռք բերում սերունդներ տալու ունակություն:

Մարդու Ս. հ–ման տարիք. սահմանները անհատական են (աղջիկներինը՝ 8–9–ից մինչև 16–17 տարեկան, տղաներինը՝ 10–11–ից մինչև 19–20):

ՍԵՌԱԿԱՆ ՀՈՐՄՈՆՆԵՐ մարդու և կենդանիների, կարգավորում են սեռ. օրգանների զարգացումն ու ֆունկցիաները, *երկրորդային սեռական հատկանիշների* զարգացումը, *սեռական հակումը* և վարքը: Արտադրվում են հիմնականում սեռ. գեղձերում՝ ամորձիներում և ձվարաններում: 2 սեռերի մոտ էլ, ինչպես արական (անդրոգեններ), այնպես էլ իգական (էստերոգեններ և պրոգեստերոն) Ս. հ. առաջանում են, սակայն տարբեր հարաբերակցությամբ: Քիմ. բնույթով ստերոիդներ են կամ պոլիպեպտիդներ:

ՍԵՌԱԿԱՆ ՍԱՀՆՈՒԹՅՈՒՆ, ֆրիգիդություն, կանանց մոտ սեռ. հակման, գրգռման և հեշտանքի զգացողության բացակայությունը: Լինում է ժամանակավոր և մշտ.: Պատճառներից են սեռ. զգացմունքի ուշացած զարգացումը (մանկականություն), հոգեկան վնասվածքը, գլխուղեղի օրգ. ախտահարումները, վարակիչ հիվանդությունները ևն:

ՍԵՌԱԿԱՆ ՅԻԿԼ, սեռահասուն իգական անհատի օրգանիզմում պարբերաբար կրկնվող ձևաբանաֆիզիոլոգ. շարժընթացների համալիրը՝ կապված սեռ. բազմացման հետ:

ՍԵՌԱԿԱՆ ՔՐՈՄՈՍՈՄՆԵՐ, բաժանասեռ օրգանիզմների քրոմոսոմներ, որոնցում տեղակայված են սեռը և նրա հետ կապված հատկանիշները պայմանավորող գեները: Մարդու և կաթնասունների բջիջների քրոմոսոմ. հավաքակազմում իգական սեռի անհատներն ունեն 2 միատեսակ (XX տիպ), իսկ արական սեռինը՝ ոչ միատեսակ (XY տիպ, X քրոմոսոմն ավելի խոշոր է) Ս. ք.:

ՍԵՌԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐ, մարդու և կենդանիների սեռ. բազմացման օրգաններ: Ս. օ. են՝ սեռ. գեղձերը (ամորձիներ, ձվարաններ), սեռ. ծորանները (սերմնատար և ձվատար), հավելյալ գոյացությունները (տարբեր գեղձեր և զուգավորման օրգանները): Կենդանածին կենդանիների Ս. օ–ի շարքին են դասվում նաև ձագերին կրելու բոլոր հարմարանքները, օր.՝ պարկավորների պարկը:

ՍԵՌԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ, բնակչության մեջ տղամարդկանց ու կանանց թվաքանակի հարաբերակցությունը: Աշխարհում 100 նորածին աղջկա հաշվով ծնվում է միջինը 104–107 տղա: Տղաների քանակ. գերազանցությունը պահպանվում է մինչև 15 տարեկանը: Երիտասարդ տարիքում սեռերի քանակը հավասարակշռվում է: Բարձր տարիք. խմբում կանայք ավելի մեծ թիվ են կազմում: 2015–ին ՀՀ մշտ. բնակչության 47,8 %–ը կազմել է արական, իսկ 52,2 %–ը՝ իգական սեռի բնակչությունը:

ՍԵՌՆԱՆ (Cernan) Յուջին (ծ. 1934), ԱՄՆ աստղագնաց: Գիտ–յունների մագիստրոս: 1–ին կարգի կապիտան: Կատարել է 3 տիեզ. թռիչք՝ «Ջեմինի–9» (1966), «Ապոլոն–10» (1969՝ Լուսնի շուրջ), «Ապոլոն–17» (1972՝ վայրէջք Լուսնի վրա) տիեզերանավերով:

ՍԵՍԻԼ (Cecil) Ուիլյամ, **բարոն Բյոռլի** (Burghley, 1520–1598), Անգլիայի թագուհի *Էլիզաբեթ I* Թյուդորի 1–ին նախարարը, 1558–ից՝ գլխ. քարտուղար, 1572–ից՝ գանձատան լորդ): Ստեղծելով ազդեցիկ բյուրոկրատ. ապարատ՝ նպաստել է բացարձակ միապետության ուժեղացմանը:

ՍԵՍՅՈՒՆ (Տոյո Օդա, 1420–1506), ճապոնացի գեղանկարիչ: Սույրոկու–գա դպրոցի ներկայացուցիչ: Տուշով ստեղծած միագույն բնանկարներն աչքի են ընկնում նուրբ երանգի և ամուր, ընդհատ գծերի զուգորդմամբ («Ձմեռային բնանկար», 1467–69):

ՍԵՍՊԵԴԵՍ (Céspedes) Կառլոս Մանուել (1819–1874), Իսպանիայից Կուբայի ազատագրման Տասնամյա պատերազմի (1868–78) ղեկ–ներից: Իսպ. զինվորները գերել են և գնդակահարել:

ՍԵՎ ԱԳՌԱՎ (Corvus corax), *ագռավների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 64, թևերի բացվածքը՝ 120–150 *սմ*, կ. զ.՝ 798–1560 *գ*: Սև, փայլուն փետրածածկով խոշոր թռչուն է: Ձայնը հեռու տարածվող կոպիտ կոռոց է: Մսվում է անողնաշարներով, մանր ողնաշարավորներով, լեշերով: Օգտակար է որպես բնական սանիտար, սակայն վերջին տասնամյակում թվաքանակը խիստ կրճատվել է: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՍԵՎ ԱՄՈՒՐ (Mylopharigodon piceus), *ծածանաձկների* ընտանիքի ձուկ: Առաջին անգամ Հայաստան է ներմուծվել XX դ–ի վերջին տասնամյակում: Հանդիպում է Մեծամոր գետում և նրա ջրերով սնվող ջրանցքներում: Խոշոր ձուկ է: Մարմնի երկ.՝ 40–45 (երբեմն՝ մինչև 65) *սմ*, կ. զ.՝ 8 *կգ* և ավելի: Մսվում է փափկամարմիններով, ջր. միջատներով և խեցգետնակերպներով: Միսն ունի բարձր համային արժեքներ:

ՍԵՎ ԱՆԳԼ (Aedypius monachus), *ճուռակների* ընտանիքի գիշատիչ թռչուն: Նստակյաց է, քիչ տարածված, անհետացող: Մարմնի երկ.՝ 95–105, թևերի բացվածքը՝ 240–280 *սմ*, կ. զ.՝ 12 *կգ*: Հզոր կտուցով խոշոր անգղ է: Սավառնում է մեծ բարձր–յուններում: Ապրում է բարձր լեռներում, գետաձորերում: Մսվում է հիմնականում լեշերով: Համարվում է բնական սանիտար: Թվաքանակը նվազում է, ուստի պահպանության կարիք ունի: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՍԵՎ ԱՐԱԳԻԼ (Ciconia nigra), *արագիլների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, հազվագյուտ: Սարմնի երկ.՝ 95–100, թևերի բացվածքը՝ 145–155 *սմ*, կ. զ.՝ 3 *կգ*: Ապրում է լ–տափաստաններում, գետերի կիրճերում, անտառներում, ձկնաբուծ. ջրավազաններում: Մսվում է ձկներով, ջր. միջատներով, երկկենցաղներով: Զափազանց զգույշ թռչուն է, խուսափում է շինություններին մոտենալուց:

«ՍԵՎ ԱՐԿԱ», 1. հիմնականում համակարգչ. տեխնիկայում օգտագործվող տերմին՝ նշելու համար այն համակարգերը, որոնց կառուցվածքն ու ներքին շարժընթացներն անհայտ են կամ շատ բարդ. այդպիսի համակարգերի ուսումնասիրության եղանակը հիմնված է հայտնի (տրված) մուտքային ազդեցություններին (ազդանշաններ) դրանց արձագանքման (ելքային ազդանշանների փոփոխություններ) վրա: 2. Ինքնաթիռների շահագործման ժամանակ տվյալների ինքնաշխատ գրանցման սարքեր, որոնք հետաքննվում են ինքնաթիռի վթարի կամ աշխ–ի խափանման դեպքում: 3. (Տնտ.) մարքեթինգ. հնարք, գնորդի վարքի մոդել, որն արտացոլում է նրա գնման որոշում կայացնելու գործընթացը:

ՍԵՎ ԱՐՔԱՅԱԶՆ (Black Prince), **Էդուարդ, Ուելսի արքայազն** (1330–1376), Հարյուրամյա պատերազմի (1337–1453) 1–ին փուլի անգլիացի զորապետներից, *Էդուարդ III* թագավորի ավագ որդին: Փառաբանվել է Քրեսիի (1346) և Պուատիեի (1356) ճակատամարտերում: 1362–72–ին՝ Աքվիտանիայի կառավարիչ:

ՍԵՎ ԵՐԱՇՏԱՀԱՎ (Parus ater), *երաշտահավերի* ընտանիքի թռչուն: Նստակյաց է: Մարմնի երկ.՝ 11,5, թևերի բացվածքը՝ 17–21 *սմ*, կ. զ.՝ 12 *գ*: ՀՀ անտառ. շրջաններում լայնորեն տարածված տեսակներից է: Մնվում է միջատներով, սերմերով: Որպես փչակաբնակ միջատակեր՝ կարող է կենսբ. պայքարի միջոց դառնալ անտառի ու այգիների վնասատու միջատների դեմ:

ՍԵՎ ԼԵՌԱՆ ԺՈՂՈՎ 1113, գումարվել է Կիլիկյան Հայաստանի Սև լ–ան (Քեսուն մոտ) Կարմիր վանքում՝ կաթողիկոս. աթոռի համար *Գրիգոր Գ Պահլավունու* և Աղթամարի եպս. Դավիթ Արծրունու վեճի պատճառով: Պատրվակ դարձնելով նորընտիր Գրիգոր Գ Պահլավունու դեռահասությունը՝ Աղթամարի եպս. Դավիթը Վասպուրականում ձեռնադրվել է հակաթոռ կաթողիկոս: Ս. լ. ժ. օրինական կաթողիկոս է ճանաչել Գրիգոր Գ Պահլավունուն: Սակայն Դավիթ եպս–ը մերժել է Ս. լ. ժ–ի որոշումը և կաթողիկոս. աթոռ է հիմնադրել Աղթամարում (տես *Աղթամարի կաթողիկոսություն*):

ՍԵՎ ԼԵՌՆԵՐԻ ԴՊՐՈՑ, միջնադար. գրչության կենտրոն Կիլիկյան Հայաստանում: Հիմնադրել է *Գրիգոր Բ Վկայասեր* կաթողիկոսը՝ *Փիլարտոս Վարաժնունու* և *Գող Վասիլի* հովանավորությամբ՝ մոտ XII դ–ի սկզբին Սև լեռների *Արեգնի վանքում*: Ս. լ. դ–ում թարգմանել են բազմաթիվ վարքեր ու վկայաբանություններ, կարգավորվել է «Շաշոցը», որը հետագայում թարգմանված վարք–վկայաբանությունների հետ դարձել է հայկ. «Հայսմավուրքի» հիմքը:

ՍԵՎ ԼԻՃ, անհոսք լիճ ՀՀ Սյունիքի մարզում՝ Գորիսի տարածաշրջանի և Ադրբեջանի սահմանին՝ Մեծ Իշխանասար լ–լանջին՝ 2666 *մ* բարձր–յան վրա: Մակերեսը՝ մոտ 2 *կմ*^{2}, երկ.՝ 1,6 *կմ*, լայն.՝ 1,2 *կմ*, առլգն խոր.՝ մոտ 7,5 *մ*, ջրի ծավալը՝ ավելի քան 9 մլն *մ*^{3}: Ջրերն օգտագործում են ոռոգման համար:

«ՍԵՎ ԽԱՉ», ազգ–ազատագր. գաղտնի կազմ–յուն (1878/79–1880–ական թթ–ի կես): Հիմնադրվել է Վանում՝ ինքնապաշտպ–յուն կազմակերպելու, զենք ու զինամթերք հայթայթելու և բնակիչների զինավարժությունն ապահովելու նպատակով: Կապ է հաստատել Կարինի «*Պաշտպան հայրենյաց*»–ի հետ: «Ս. խ.» հովանավորել են Վանի հոգևոր առաջնորդ Մ. Խրիմյանը, Ռուսաստանի փոխհյուպատոս Կ. Կամսարականը և Վանի Կեդրոն. վարժարանի տնօրեն Մ. Փորթուգալյանը:

ՍԵՎ ԽՈՒՌՁԵՐ, տիեզ. օբյեկտներ, որոնց գոյությունը կանխատեսվել է հարաբերականության ընդհ. տեսությամբ, համաձայն որի՝ Ս. խ. առաջանում են զանգվածեղ տիեզ. մարմինների անսահմանափակ ձգողական սեղմման (գրավիտացիոն կոլապս) ժամանակ: Ս. խ–ի ճառագայթումն «արգելափակված է» սեփ. գրավիտացիայով, հետևաբար

դրանք կարելի է հայտնաբերել միայն իրենց ձգողության ուժի ազդեցությամբ (հարևան կրկնակի աստղի շարժման վրա) կամ արտաքին միջավայրից նրանց մեջ լցվող գազի ճառագայթմամբ:

ՍԵՎ ԾԱՌ, **էբենածառ**, ***էբենագգիների*** ընտանիքի արևադարձ. ծառերի մի քանի տեսակների, նաև այդ ծառերի սև կամ մուգ բնափայտի անվանումը: Տարեկան օղակների տարբերակում չունի: Արժեքավոր բնափայտից պատրաստում են կահույք, փող. նվագարաններ ևն:

ՍԵՎ ԾՈՎ, Եվրոպայի և Փոքր Ասիայի միջև, ողողում է Աբխազիայի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Բուլղարիայի, Ռումինիայի և Թուրքիայի ափերը: Կերչի նեղուցով միացած է Ազովի, Բոսֆորի նեղուցով՝ Մարմարա, Դարդանելի նեղուցով՝ Էգեյան և Միջերկր. ծովերին: Մակերեսը՝ 422 հզ. *կմ*^{2}, առյգն խոր.՝ 2210 *մ*: Խոշոր են Դնեստրովսկի և Դնեպր-Բուգյան լիմանները, Կարկինիտյան, Կալամիտյան, Սամսունյան և Սինոպյան ծոցերը: Ս. ծ. են թափվում Դանուբը, Դնեստրը, Հվ. Բուգը, Դնեպրը, Ռիոնը, Կզըլ-Իրմակը: 150 *մ* և ավելի խոր-յուններում ջուրը հագեցած է ծծմբաջրածնով (մեծ խոր-յուններում չկա կենդ. աշխարհ): Կա ձկնաբուծություն (թառափ, բելուգա, հարինգ, պելամիդա, սկումբրիա ևն): Հիմն. նվինգստ-ներն են Օդեսան, Իլիչևսկը (Ուկրաինա), Սևաստոպոլը (ՌԴ), Փոթին, Բաթումը (Վրաստան), Կոնստանցան (Ռումինիա), Բուրգասը, Վառնան (Բուլղարիա), Սամսունը, Տրապիզոնը (Թուրքիա): Ափերին կան բազմաթիվ առողջարաններ:

«ՍԵՎ ԿԱՏՈՒ», գր., երգիծ. շաբաթաթերթ (1912–13, Կ. Պոլիս): Տնօրեն՝ Գրիգոր Գալֆայան, խմբագրապետ՝ Երվանդ Օտյան:

ՍԵՎ ԿԵՌՆԵԽ (Turdus merula), ***կռնեխների*** ընտանիքի թռչուն: Նստակյաց է, կեռնեխներից ամենատարածվածը: Մարմնի երկ.՝ 24–25, թևերի բացվածքը՝ 34–38,5 *սմ*, կ. զ.՝ 82–125 *գ*: Ապրում է խառն ու սաղարթավոր անտառներում (Երևանում հայտնվել է 1962-ից): Երգում է ծառերի բարձր ճյուղերին նստած: Օգտակար է. ոչնչացնում է միջատներին: Որոշակի գեղագիտ. արժեք ունի՝ սրնգային գրավիչ երգով:

«ՍԵՎ ՄԱՀ», ժանտախտի համաճարակ Եվրոպայում 1346–50-ին, որից մահացել է 25 մլն մարդ:

ՍԵՎ ՄԱՆԳԱՂԱԹԵՎ (Apus apus), ***մանգաղաթևների*** ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող: Մարմնի երկ.՝ 16–17, թևերի բացվածքը՝ 42–48 *սմ*, կ. զ.՝ 90–110 *գ*: Ապրում է ուղղաձիգ ժայռերում, գետաձորերում, քաղաքներում: Ոչնչացնում է թռչող միջատներին (մոծակներ, մժեղներ ևն):

ՍԵՎ ՄԵՏԱՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գիտության ու տեխնիկայի բնագավառ և արդյան ճյուղ. ընդգրկում է սև մետաղների արտադր-յունը՝ հանք. հումքի արդյունահանումից և վերամշակումից մինչև թուջի, պողպատի, գլանվածքի, սև մետաղների փոշու, թուջե և պողպատե իրերի (խողովակներ, մետաղե իրեր ևն) ստացումը, ինչպես նաև ողջ հանք. հումքի վերամշակումը, կոքսաքիմ. արտադր-յունը ևն:

«ՍԵՎ ՇՈՒԿԱ», մեծ պահանջարկ ունեցող ապրանքների (սովորաբար՝ սպառող.) ընդհատակյա սպեկուլյատիվ առևտրի ոլորտ:

ՍԵՎ ՋՐԱԾԻԾԱՌ (Chlidonias niger), ***ջրածիծառների*** ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, հազվագյուտ: Մարմնի երկ.՝ 22–24, թևերի բացվածքը՝ 64–68 *սմ*: Թռիչքն աշխույժ է, ընթացքում կեր է կտցում ջրի մակերեսից: Ապրում է ձկնաբուծ. լճակներում:

ՍԵՎ ՅԻՆ (Milvus migrans), ***ճուռակների*** ընտանիքի թռչուն: Նստակյաց է: Մարմնի երկ.՝ 55–60, թևերի բացվածքը՝ 160–180 *սմ*, կ. զ.՝ 0,7–1,1 *կգ*: Թռիչքը ճարպիկ է՝ ոլորաձանձան ու շարժուն պոչով: Մսվում է միջատներով, մանր կրծողներով: Բնային կյանքում կերի պակասության ժամանակ նկատվում է կանիբալիզմի երևույթը: Բնական սանիտար է, ոչնչացնում է կրծողներին: Թվաքանակը կրճատվել է 4–5 անգամ:

ՍԵՎ ՓԱՅՏՓՈՐ (Dryocopus martius), ***փայտփորների*** ընտանիքի թռչուն: Նստակյաց է, հազվագյուտ: Տարածված է ՀՀ հս. և հվ. մարզերի անտառներում: Մարմնի երկ.՝ 45–57, թևերի բացվածքը՝ 64–68 *սմ*, կ. զ.՝ 300 *գ*: Խոշոր փայտփոր է: Աղմկարար է: Մսվում է մրջյուններով, փայտահատ բզեզներով և մեծ քանակությամբ բզեզների թրթուրներով: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՍԵՎ ՓԱՐՓԱՐ (Fulica atra), ***ջրահովվիկների*** ընտանիքի թռչուն: Նստակյաց է, տարածված: Մարմնի երկ.՝ 36–38, թևերի բացվածքը՝ 70–80 *սմ*, կ. զ.՝ 500–1100 *գ*: Ապրում է բոլոր բնական և արհեստ. ջրավազաններում, ճահճուտներում: Օրվա մեծ մասն անցկացնում է ջրի վրա: Մսվում է ջր. բույսերով, որդերով, միջատներով: Որսաթռչուն է:

ՍԵՎԱԲԵՐԴԻ ՋՐԱՄԲԱՐ, ՀՀ Կոտայքի մարզում՝ Գետառի ավազանում՝ Գեղամա լ-վահանի արմ. լանջին՝ 2000 *մ* բարձրյան վրա: Կառուցվել է 1980–83-ին: Հայելու մակերեսը՝ մոտ 50 *հա*, երկ.՝ 750 *մ*, լայն.՝ 600 *մ*, խոր.՝ 37 *մ*, ընդհ. ծավալը՝ 6 մլն *մ*^{3}, օգտ.՝ 4 մլն *մ*^{3}: Ջրամբարից ջուր է տրվում Կոտայքի ջրանցքին:

ՍԵՎԱԳԼՈՒԽ ԴՐԱԽՏԱՊԱՆ (Emberizia melanocephala), ***դրախտապանների*** ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող: Արուներն անընդհատ երգում են: Մարմնի երկ.՝ 16–17, թևերի բացվածքը՝ 26–30 *սմ*, կ. զ.՝ 23–30 *գ*: Մսվում է անողնաշարներով, սերմերով: 1985-ից նկատվում է թվաքանակի անկում, կարիք ունի անհատ. պաշտպ-յան:

ՍԵՎԱԳԼՈՒԽ ՇԱՀՐԻԿ (Silvia atricapilla), ***շահրիկների*** ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 13, թևերի բացվածքը՝ 20–23 *սմ*, կ. զ.՝ 18–21 *գ*: Բնակվում է սաղարթավոր անտառների խիտ թփուտ. հատվածներում: Մսվում է մանր անողնաշարներով, պտուղներով: Ս. շ-ի համակեցությունը լայն է, կայուն:

ՍԵՎԱԳԼՈՒԽ ՁԱՁԱՔԱՆ (Saxicola torquata), ***կռնեխների*** ընտանիքի թռչուն: Նստակյաց է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 12,5, թևերի բացվածքը՝ 18–21 *սմ*: Պոչը մշտապես տատանում է: Գերադասում է բաց տարածքները՝ ջրերից ոչ հեռու:

ՍԵՎԱՊ, **սավատ**, ոսկե կամ արծաթե իրերի վրա սև կամ մուգ մոխրագույն զարդանախշեր, կատարվում են նախօրոք փորագրված փոսորակների մեջ հատուկ U-ային միահալվածք (արծաթի, կապարի, պղնձի սուլֆիդների խառնուրդ) լցնելով:

ՍԵՎԱԹԻԿՈՒՆՔ ՔԱՐԱԹՈՒՉՆԱԿ (Oenanthe pleschanka), ***կռնեխների*** ընտանիքի թռչուն: Պատահական չվահյուր է: Մարմնի երկ.՝ 14,5, թևերի բացվածքը՝ 25,5–27,5 *սմ*: Ապրում է քարքարոտ կիսաանապատներում: Զոհին հետևում է թփուտներին կամ քարերին նստած:

ՍԵՎԱԽՈՄԻ ԿԵՌՆԵԽ (Turdus rufucollis), ***կռնեխների*** ընտանիքի թռչուն: Չվող է, հազվագյուտ: Մարմնի երկ.՝ 25, թևերի բացվածքը՝ 37–40 *սմ*: Թաքնվում է թփուտներում, ծառերի սաղարթում: Ապրում է գիհու նոսրանտառներում, թփուտներում, պտղատու այգիներում: Մսվում է անողնաշարներով, հատապտուղներով: ՀՀ-ում հայտնաբերվել է 1993-ին «Խոսրովի անտառ» արգելոցում, 1995-ին՝ Գեղարքունիքի, Արարատի և Վայոց ձորի մարզերում:

ՍԵՎԱԽՈՄԻ ՍՈՒՋԱՀԱՎ (Gavia arctica), ***սուզահավերի*** ընտանիքի թռչուն: Պատահական չվահյուր է: Մարմնի երկ.՝ 58–73, թևերի բացվածքը՝ 110–130 *սմ*, կ. զ.՝ 3 *կգ*: Կտուցն ուղիղ է: Թռչում է թափավազքով: Ապրում է լճերում, ջրամբարներում, մեծ գետերում: Մսվում է ձկներով: ՀՀ-ում Սևանա լճի ավազանում հայտնվել է 1930-ին և 1994-ին:

ՍԵՎԱԽԱՅՏ ՔԱՐԱԹՈՒՉՆԱԿ (Oenanthe hispanica), ***կռնեխների*** ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, տարածված: Մարմնի երկ.՝ 14,5, թևերի բացվածքը՝ 25–27 *սմ*, կ. զ.՝ 17–26 *գ*: Ապրում է չոր քարքարոտ կիսաանապատներում: Զոհին բռնելու համար կատարում է կարճ թռիչքներ: Մսվում է անողնաշարներով:

ՍԵՎԱԿ (Գրիգորյան) Գուրգեն Գրիգորի (1904–1981), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ-ր (1948), պրոֆ. (1948): ՀԽՍՀ ԳԱ ակադ (1971, թղթ. անդամ՝ 1956-ից): ՀԽՍՀ (1961) և ՎԽՍՀ (1967) գիտ. վաստ. գործիչ: Հեղինակ է «Ժամանակակից հայոց լեզվի տեսություն» (գիրք 1, 2, 1939, 1947, վերամշկ. հրտ.՝ «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց», 1955), «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» (1948) և այլ աշխ-ների, «Հայոց լեզվի շարահյուսություն» (1936) դասագրքի (ունեցել է ավելի քան 30 հրտ.),1958-ին՝ *«Հայկական էսպերանտիստ»* պարբ-ի հիմնադիր-խմբ.:

ՍԵՎԱԿ (Կարապետյան) Մանասե Կիրակոսի (1897–1967), ամերիկահայ կենսաքիմիկոս: Փիլ. գիտ. դ-ր (1929): Աշխ-ները վերաբերում են նուկլեինաթթուների և սպիտակուց. միացությունների փոխանակության հարցերին: Մշակել է քլորոֆորմի միջոցով այդ նյութերի անջատման և մաքրման՝ ներկայում լայնորեն կիրառվող եղանակ:

Նյու Յորքի ԳԱ (1952), ՀԽՍՀ ԳԱ առաջին պրտ. (1960) անդամ, Հայ-ամերիկ. գիտ. միության կազմակերպիչներից և հիմնադիր-անդամ (1931), Ֆիլադելֆիայի հայկ. պատմ. հետազոտությունների ընկ-յան առաջին նախագահ (1963–67) ևն:

ՍԵՎԱԿ (Ղազարյան) Պարույր Ռաֆայելի (1924–1971), բանաստեղծ, մշակույթի գործիչ: Բանասիր. գիտ. դ-ր (1970): 1966–71-ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար: Հեղինակ է մարդու ներաշխարհի գաղտնիքները բացահայտող «Անմահները հրամայում են» (1948), «Սիրո ճանապարհ» (1954), «Նորից քեզ հետ» (1957) բանաստեղծությունների, «Մարդը ափի մեջ» (1957) բանաստեղծությունների և պոեմների ժող-ների, որոնց ընդորոշ են «ազատ բանաստեղծության» ձևն ու բանաստեղծ. հնարքների ճկունությունը, «Ուշացած իմ սեր», «Նահանջ երգով», «Երգ երգոց» բանաստեղծությունների շարքերի, «Անլռելի զանգա-

կատուն» (1959, վերամշկ. հրտ.՝ 1966) քնարափիլ. պոեմի, որտեղ պատկերել է Կոմիտասի կյանքը, «Եվ այր մի Մաշտոց անուն» (1962) ու «Եռաձայն պատարագ» (1965) պոեմների, որոնք հատկանշվում են հայրենասիր. շնչով ու փիլ. հարցադրումներով, «Եղիցի լույս» (1971) բանաստեղծությունների և պոեմների ժող-ի, որտեղ ներկայացրել է ժամանակակցին՝ իր բարդ ու հակաս. կյանքով, «Սայաթ-Նովա» (1969) մենագրության: ՀԽՍՀ Պետ. մրց. (1967):

ՍԵՎԱԿ Ռուբեն (Չիլինկիրյան Ռուբեն Հովհաննեսի, 1885–1915), բանաստեղծ, արձակագիր, բժիշկ: 1911–14-ին Լոզանում աշխատել է որպես բժիշկ: Հեղինակ է «Կարմիր գիրք» (1910) բանաստեղծությունների ժող-ի, որն ամփոփում է «Ձարդի խենթը», «Քրդուհին», «Մարդերգութիւն» պոեմները, «Երգ երգոց», «Գինով սէր», «Եկուր», «Ինչո՞ւ», «Սիրոյ եւ մահուան երգը» և այլ սիրային երգերի շարքեր, որոնք աչքի են ընկնում զգացմունքների խորությամբ և արտահայտչամիջոցների թարմությամբ, նաև պատմվածքների, հանրամատչելի զրույցների, քնար. խորհրդածությունների: «Բժիշկին գիրքէն փրցուած էջեր» (1913) ժող-ում ամփոփված են բժշկ. զրույցները: Մեծ եղեռնի զոհ: 2013-ին Սայր աթոռ Սբ Էջմիածնում բացվել է Ս-ի թանգարանը:

ՍԵՎԱԿԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ, հիմնադրվել է 1971-ին ՀՀ Արարատի մարզի Ջանգակատուն գյուղում՝ Պարույր *Սևակի* նորակառույց տան կողքին: Թանգարանում ցուցադրված են բանաստեղծի կյանքին և գր. գործունեությանը վերաբերող ցուցանմուշներ: Ամեն տարի (բանաստեղծի մահվան օրը՝ հունիսի 17-ին) կազմակերպվում են սևակյան օրեր և ընթերցումներ: Թանգարան. արժեք ունի նաև Պ. Սևակի հայր. տունը: Թանգարանի բակում է բանաստեղծի գերեզմանը:

ՍԵՎԱԿՆ, հնավայր ՀՀ Շիրակի մարզի Շիրակավան գ-ից հվ՝ Ախուրյանի և նրա Սևակն վտակի միախառնման տեղում: Տարածքը՝ մոտ 5 *հա*: Մի մասը մնացել է *Ախուրյանի ջրամբարի* տակ: Բնակավայրն ընդմիջումներով գոյություն է ունեցել մ. թ. ա. I–մ. թ. III դդ-ում: Վերին սանդղավանում բացվել է փոքր սրբարան, մոտ 1200 *մ*^{2} տարածքով պալատ. համալիր (առանձնանում է 8 բոլորաձև սյուներով սրահը) ևն: Ստորին սանդղավանում բացված բնակելի-արտադր. շինությունները բաղկացած են 3–5 կից սենյակներից ու բակերից:

ՍԵՎԱՀՈՂԵՐ, բարեխառն գոտու անտառատափաստան. և տափաստան. գոտու հողի տիպ: Պարունակում է 4–15 % հումուս: Ստորաբաժանվում են պոդզոլացված, լվացված, տիպիկ, սովոր. և հվ. ենթատիպերի: Ս-ի գոտին երկրագործության կարևոր շրջան է. մշակում են հացահատիկ., տեխ., բանջար., կեր. բույսեր, կան խաղողի և պտղատու այգիներ: Տարածված են Եվրոպայում, ԱՄՆ-ում, Հվ. Կանադայում, Հվ. Արգենտինայում, Չիլիի նախալեռն. շրջաններում:

ՀՀ-ում տարածված են լեռն. Ս. (հանրապետության տարածքի 27,5 %-ը)՝ 1300–2400 *մ* բարձր-ների թեք սարահարթերին ու լ-լանջերին:

ՍԵՎԱՃԱԿԱՏ ՇԱՄԿԱՐՈՒԿ (Lanius minor), *շամկրուկների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, քիչ տարածված: Մարմնի երկ՝ 20, թևերի բացվածքը՝ 32–34,5 *սմ*: Ապրում է կիսաանապատներում, լ-տափաստաններում: Թռչում է գետնից ոչ բարձր, զոհին բռնում է կտուցով: Մնվում է անողնաշարներով, հազվադեպ՝ պտուղներով:

ՍԵՎԱՄԱՐՏԻՆՆԵՐ (Tenebrionidae), *բզեզների* ընտանիք: Երկ.՝ 2–50 *մմ*: Հայտնի է ավելի քան 200 տեսակ: Հիմնականում բուսակեր են, մի շարք տեսակներ՝ գիշատիչներ: Որոշ տեսակների թրթուրները (կեղծ լարաթրթուրներ) վնասում են մշակաբույսերն ու մթերքը:

ՍԵՎԱՆ Գեղամ Լևոնի (1926–1991), գրող, գրականագետ, խմբ.: Բանասիր. գիտ. դ-ր (1983): 1950–59-ին՝ *«Ժողովածու գրականութեան եւ արուեստի»* պարբերագրքի խմբ. (Գառնիկ *Ադտարյանի* և ուր. հետ): 1962-ին հայրենադարձել է: Հեղինակ է «Սեւ ծովը նոյնն է միշտ» (1954), «Ծիծեռնակները ցածէն անցան» (1964), «Հայոց թաղը» (1967), «Երեք սերունդ» (1974), «Ամեն մարդ իր ճանապարհով» (1979) և պատմվածքների այլ ժող-ների, «Ինչո՞ւ, ինչի՞ համար» (1982), «Հող և սեր» (1986) վեպերի, «Վազգեն Շուշանյան» (1968), «Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր» (գիրք 1, 2, 1980, 1997), «Հակոբ Մնձուրի» (1981), «Գառնիկ Ադտարյան» (1998) աշխ-ների:

ՀԳՄ Դ. Դեմիրճյանի անվ. մրց. (1983):

ՍԵՎԱՆ (Խաչատրյան) Հենրիկ Կարապետի (1925–2008), բանաստեղծ, թարգմանիչ, խմբ.: 1968–82-ին՝ *«Սովետական գրականություն»* ամսագրի պատ. քարտուղար: Հեղինակ է «Զվարճալի զբոսանք» (1963), «Գնաս բարով, իմ քիթ» (1968), «Ծիծաղ վաճառողը» (1973), «Գլուխն ուղարկեց նորոգելու» (1975), «Կոշիկ ուտող ծերունին» (2000), «Գրագետ քամին» (2006) և մանկ. բանաստեղծությունների այլ ժող-ների: Բնագրից թարգմանել է Վ. Շեքսպիրի, Ջ. Բայրոնի, Հ. Լոնգֆելլոյի, Մ. Յ. Լերմոնտովի, Ս. Մարշակի գործերից:

ՀԳՄ Ս. Զորյանի անվ. մրց. (1985):

ՍԵՎԱՆ Սևադա (Բախչեճյան Ֆրանսուհի) Գևորգի (1945–2009), գրող, հրապարակախոս: Գրել է բուլղ.: 1994–99-ին՝ Բուլղարիայում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար, 1999–2005-ին՝ արտակարգ և լիազոր դեսպան: Հեղինակ է «Քար քարի վրա» բանաստեղծությունների (1974) ժող-ի, «Ռոդոսթո, Ռոդոսթո» (1983, հայ.՝ 1984), «Ինչ-որ տեղ Բալկաններում» (1987), «Տեր-Զոր» (1996) եռերգության, «Հայրենիք-Սփյուռք գրական կապեր 1920–1985» (1989) աշխ-յան:

ՍԵՎԱՆ (մինչև 1935-ը՝ գ. Ելենովկա), ք. (1961-ից) ՀՀ Գեղարքունիքի մարզում, Երևանից 66 *կմ* հս՝ Սևանա լճի հս-արմ. ափին՝ 1925 *մ* բարձր-յան վրա: Տարածվում է Լճաշենն գ-ից մինչև Սևանի թ-կոզին, ընդգրկում է նախկին Գոմաձոր և Ցամաքարերդ գ-երը: Բն.՝ 23,5 հզ. (2012): Տնտ-յան առաջատար ճյուղը զբոսաշրջությունն է: Կան նաև մշակող արդ-յան, շինանյութերի, քիմ., սննդի և մեքենաշին. ձեռն-ներ: Տարածքում է Սևանի ստորգետնյա ջրէկը: Երևան–Դիլիջան, Երևան–Գավառ ավտոմայրուղիների հանգույց է, երկթղ-ով կապված է Երևանի և Սոթքի հետ: Հիմնադրել են Ռուսաստանից աքսորված մոլականները 1842-ին:

«ՍԵՎԱՆ», հիդրոկարբոնատ-քլորիդ., նատրիում-մագնեզիում., ցածր ջերմաստիճանի հանք. ջուր ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Գավառ ք-ի տարածքում (Գավառագետի ձախ ափին) և շրջակայքում: Առաջանում է բազալտ. անդեզիտներով ծածկված պլիոցենի լճագետ. նստվածքներում: Շահագործվում է 1955-ից: Հանքայնացումը 2,8 *գ/լ* է, CO_2-ի պարունակությունը՝ 1,8 *գ/լ*, շահագործման պաշարները՝ 1710 *մ*^{3}*/օր*: Պարունակում է Fe, I, Br, B, F, Zn միկրոտարրեր: Ջրաբուժ. հատկություններով նման է «Հանքավան», «Լիճք» և «Եսենտուկի» № 4 (ՌԴ) հանք. ջրերին: Օգտագործվում է ստամոքսաղիք., միզուղիների հիվանդությունների և նյութափոխանակության խանգարումների դեպքերում:

«ՍԵՎԱՆ», կիսամսյա թերթ (1939-ից, ք. Սևան, 1939–65-ին՝ տարբեր անվանումներով): Մինչև 1989-ը՝ ՀԿԿ Սևանի շրջկոմի, ժողպատգմ-ների շրջ. և քաղաք. խորհուրդների պաշտոնաթերթ: Խմբ.՝ Պապ Հայրապետյան (1997-ից):

«ՍԵՎԱՆ», հրտչ-յուն և տպարան, ստեղծվել է 1955-ին Բեյրութում: Հիմնադիր-տպարանատեր, գլխ. խմբ.՝ Սիմոն *Սիմոնյան*: Շուրջ 30-ամյա գործունեության ընթացքում լույս է ընծայել 500-ից ավելի գր-գեղ., պատմալուսավորչ., բանասիր., թարգմ. և բազմաբնույթ այլ գրքեր, շուրջ 55 անուն դասագրքեր:

«ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ, հատուկ պահպանվող տարածք ՀՀ Գեղարքունիքի մարզում: Կազմավորվել է 1978-ին՝ Սևանա լճի բնական էկոհամակարգի պահպանության նպատակով: Ընդհ. տարածքը՝ 147343 *հա* (22585 *հա*՝ ցամաք.): Ընդգրկում է լճի ջր. հայելին և դրան հարող ափամերձ տարածքի ջրից ազատված հատակ. գրունտները՝ մինչև շուրջլճյա ավտոճանապարհը: Ունի պահպան. գոտի, որն ընդգրկում է Սևանա լճի ողջ ավազանը. սահմանն անցնում է լիճը եզերող լ-շղթաների (Արեգունի, Սևանի, Գեղամա, Վարդենիսի, Փամբակի) ջրբաժանով: Պարկում առանձնացված են արգելոցային, ռեկրեացիայի և տնտ. գոտիներ:

ՍԵՎԱՆԱ ԼԻՃ, Գեղամա ծով, Գեղարքունյաց ծով, լիճ Հայկ. լ-աշխարհի (մեծությամբ՝ 3-րդը) հս-արլ-ում՝ Արեգունու, Սևանի, Արլ. Սևանի, Վարդենիսի լ-շղթաներով և Գեղամա լ-վահանով շրջապատված միջլեռն. գոգավորությունում: Աշխարհի քաղցրահամ, բարձրադիր, նավարկելի մեծ լճերից է: Կազմված է Մեծ Ս. լ-ից և Փոքր Ս. լ-ից: Նախնական վիճակում լճի հայելու մակարդակը եղել է 1915,57 *մ* բարձր-յան վրա, հայելու մակերեսը՝ 1416 *կմ*^{2}, ջրի ծավալը՝ 58,48 *կմ*^{3}: Էլեկտրաէներգիա ստանալու նպատակով 1933–62-ին կառուցվել են Սևան-Հրազդան կասկադի էլեկտրակայանները, ջրերով ոռոգվել են Արարատյան դաշտի հողերը (ոռոգելի հողատարածությունն ավելացել է մոտ100 հզ. *հա*-ով): Արդյունքում ջրի մակարդակն իջել է մինչև 1869 *մ* բացարձակ բարձ., որը վտանգավոր էր էկոլոգ. առումով: Սպառնացող աղետը կանխելու համար կառուցվել են *Արփա-Սևան*, ապա՝ *Որոտան-Արփա-Սևան* ջրատարները, որոնց ջրերով լճի մակարդակը բարձրացել է մինչև 1900 *մ* (տարեկան՝ 25–35 *սմ*, նախատեսված է մինչև 1905 *մ* բարձրացում), ավազանի մակերեսը՝ 1260 *կմ*^{2}, ջրի ծավալը՝ 32,92 *կմ*^{3}, միջին խոր.՝ 26,8 *մ* (առլճ՝ 83 *մ*):

2008-ին Սևանի հիմնահարցով զբաղվելու համար ստեղծվել է հանձնաժո-

ղով, 1978–ին լճի շուրջ կազմակերպվել է *«Սևան» ազգային պարկը*: Լճի ափերն օգտագործվում են որպես ռեկրեացիոն գոտի, հանգստի և զբոսաշրջության տարածքներ:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀՀ բնապահպան. և տնտ. բացառիկ կարևոր հիմնախնդիր, որի նպատակը լճի բնական ռեժիմի փոփոխության հետևանքով ֆիզիկաաշխարհագր. երևույթների էկոլոգ. հավասարակշռության խախտման վերացումն է: Գիտ. շրջանառության մեջ մտել է XX դ–ի սկզբին, երբ ակնհայտ են դարձել Սևանա լճի էներգետիկ և դարավոր ջր. պաշարների օգտագործման հնարավորությունները:

ՍԵՎԱՆԱՎԱՆՔ, *Սևանի անապատ*, ճարտ. համալիր Սևանի թ–կղզում: Հիմնադրել է Գրիգոր Ա Լուսավորիչը. հեթանոս. մեհյանի տեղում կառուցել է Սբ Հարություն եկեղեցին: Այնուհետ Սարիաս Բագրատունի իշխանուհու մեկենասությամբ Մաշտոց Ա Եղիվարդեցին 871–874–ին կառուցել է վանքի Սբ Աստվածածին և Սբ Առաքելոց (Սբ Կարապետ) խաչաձև գմբեթավոր եկեղեցիները: Կանգուն Սբ Աստվածածին եկեղեցին ունի ավանդատներ: 1956–57–ին նորոգվել են վանքի եկեղեցիները, 1990–ից դարձել է գործող՝ *Վազգենյան հոգևոր դպրանոցով*:

ՍԵՎԱՆԻ ԲԵՂԼՈՒ (Barbus dokischaicus), *ծածանաձկների* ընտանիքի ձուկ: ՀՀ–ում տարածված է միայն Սևանա լճում և նրա ավազանի գետերում: Միջին չափի ձուկ է: Մարմինը գլանաձև է, երկ.՝ 15–18 (երբեմն՝ մինչև 30) *սմ*, կ. զ.՝ 500 *գ*: Հանդիպում է վտառներով: Վարում է մերձհատակ. կենսակերպ: Սնվում է միջատներով ու նրանց թրթուրներով, խեցգետնակերպներով, փափկամարմիններով ևն: Ունեցել է արդ. նշանակություն, այժմ որսն արգելված է: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՍԵՎԱՆԻ ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ֆիզիկաաշխարհագր. շրջան ՀՀ արլ. մասում: Արլ–ից եզրավորվում է Արեգունի, Սևանի, Արլ. Սևանի, հվ–ից՝ Վարդենիսի, արմ–ից՝ Գեղամա և Փամբակի լ–շղթաներով: Տարածքը՝ 4891 *կմ*², երկ.՝ 120 *կմ*, առլգն լայն.՝ 70 *կմ*: Ամենացածրադիր մասն զբաղեցնում է Սևանա լիճը: Տիրապետում են լավային սարավանդներն ու հրաբխ. կոները: Գոգավորությունում կան կուտակ. հարթավայրեր, առավել խոշորը Մասրիկի դաշտն է: Լեռների բարձրադիր մասերում գերակշռում են լ–մարգագետինները, 2800 *մ*–ից բարձր՝ ալպ. գորգերը: Արեգունի և Սևանի լ–շղթաներում տեղ–տեղ հանդիպում են թփուտ. նոսրանտառներ: Անտառածածկ է Արտանիշ թ–կղզին:

ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂՋԻ, Սևանա լճի հս–արմ–ում: Առաջացել է 1952–ին՝ լճի մակարդակի իջեցման հետևանքով: Բարձր.՝ մինչև 1976 *մ*: Կազմված է հրաբխ. ապարներից (առավելապես՝ տուֆեր) և ավազաքարերից: Բարձրադիր մասում լանջերն ուղղորդ են, լանդշաֆտը՝ լեռնատափաստան., ցածրադիր մասում՝ անտառ. (մարդատունկ): Կա ջրաօդերևութաբան. դիտակայան, գործում են հանգստյան տներ: Կղզին բնակեցված է եղել դեռևս վաղ ժամանակներից և ունեցել է պարսպապատ բերդ: Հեթանոս. մեհյանի տեղում IV դ–ում կառուցվել է քրիստ. եկեղեցի: Սբ Առաքելոց և Սբ Աստվածամայր եկեղեցիներին կից գործել են ձեռագրատուն և դպրոց: Պահպանվել են Սևանի վանքը (IX դ.) և խաչքարեր (XIII–XVI դդ.), 1990–ից գործում է Վազգենյան հոգևոր դպրանոցը: Ներառված է «Սևան» ազգ. պարկի տարածքի մեջ:

ՍԵՎԱՆԻ ԻՇԽԱՆ, սաղմոնազգիների ընտանիքի ձուկ: Առաջացել է կարմրախայտից և բնորոշ է միայն Սևանա լճին: Մարմինը գլանաձև է կամ իլիկաձև՝ ամբողջ երկ–յամբ արծաթափայլ թեփուկներով պատված: Ստերջ վիճակում մարմինը պատվում է մանր կլորավուն սև պուտերով: Ունի 4 ենթատեսակ՝ *ձմեռային* և *ամառային* Ի., *գեղարքունի* և *բոջակ*:

ՍԵՎԱՆԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Փամբակի և Արեգունի լ–շղթաների միջև՝ 2114 *մ* բարձր–յան վրա: Սևանա լճի ավազանը միացնում է Աղստևի հովտին: Ս. լ–ով է անցնում Երևան–Սևան–Դիլիջան մայրուղին: Ս. լ–ի տակ կառուցվել է Սևան, Դիլիջան ավտոմոբիլ. թունել:

ՍԵՎԱՆԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, ՀՀ և Ադրբեջանի սահմանին՝ Սևանի ավազանի արլ. մասում՝ Քաշաթաղ և Հինալ լ–գագաթների միջև: Երկ.՝ մոտ 50 *կմ*, առլգն բարձր.՝ 3317 *մ*: Լանջերին կան կաղնու, գիհու և թխկու անտառներ:

ՍԵՎԱՆԻ ԿՈՂԱԿ [Capoeta (variorhinus) capoeta sevani], *ծածանաձկների* ընտանիքի ձուկ: ՀՀ–ում տարածված է Սևանա լճում, Արաքս, Հրազդան, Մեծամոր, Քասաղ, Արփա, Աղստև, Որոտան և այլ գետերում ու դրանց ջրերով սնվող խոշոր ջրամբարներում: Միջին չափի ձուկ է: Սնրմնի երկ.՝ 35–40 (երբեմն՝ մինչև 50) *սմ*, կ. զ.՝ 2 *կգ* և ավելի: Վարում է մերձհատակ. կենսաձև: Բուսակեր է. սնվում է ստորակարգ ջրիմուռներով, դետրիտով ևն: Սևանա լճում ունի արդ. նշանակություն: Պաշարներն զգալի նվազել են. պահպանության կարիք ունի:

ՍԵՎԱՆԻ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ, *Սևան–Հրազդանի կասկադի* 1–ին ջրէկը: Շահագործման է հանձնվել 1949–ին: Կայանի կառույցները և շենքը տեղակայված են Սևանա լճի մակերևույթից 100 *մ* խոր–յան վրա: Սարքավորված է 34,2 *ՄՎտ* ընդհ. հզորությամբ, 60 *մ* հաշվարկ. ճնշումով, 70 *մ*³/*վ* ջրի ծախսով գործող 2 շառավղաառանցք. տուրբոգեներատորներ, սկիզբ է առնում 5,5 *կմ* երկ–յամբ անճնշում թունելը, որին հաջորդում է կասկադի 2–րդ աստիճանը:

ՍԵՎԱՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 925, *Աշոտ Բ Երկաթի* և Ատրպատականի արաբ. Սաջյան ամիրության զորքերի միջև ամռանը Սևանա լճի ափին: Սևանի կղզում առժամանակ ամրացած Աշոտ Բ փոքրաթիվ ուժերով, լաստանավերով մոտեցել է ափին, նետաձգությամբ հանկարծակիի բերել արաբներին, իջել ափ և պարտության մատնել նրանց: Դվին փախչող զորավար Բեշիրին նոր հարված է հասցրել Աշոտ Բ–ի զորականներից Գևորգը (տես *Գևորգ Սևրզպետունի*):

ՍԵՎԱՆԻ ՃԿՎԱԾՔ, նեոգեն–անթրոպոգենի տեկտ. իջվածք ՀՀ արլ. մասում: Եզրավորված է Արեգունու, Սևանի, Արլ. Սևանի, Վարդենիսի, Գեղամա ու Փամբակի լ–շղթաներով: Ձգվում է հս–արմ–ից հվ–արլ. (երկ.՝ 120 *կմ*, լայն.՝ 30–70 *կմ*): Գրաբեն. կառուցվածքը ճեավորվել է խզումն. տեկտ. շարժումների, կամարածալք. բարձրացումների ու գոգածալք. իջեցումների հետևանքով: Առավել ճկված մասում առաջացել է Սևանա լիճը, որը Արտանիշ–Նորատուս ստորջրյա լայնական արգելապատով բաժանվում է Մեծ և Փոքր Սևանների: Ճկվածքով ձգվում է երկրաշարժաակտիվ խախտում, որը միանում է Բազում–Սևանի և Ջանգեզուրի խորք. բեկվածքներին: Փոքր Սևանի ճկվածքը երիտասարդ (միջին–վերին անթրոպոգեն) գրաբեն է, որը ուղղաձիգ տեկտ. շարժումների հետևանքով մի քանի անգամ ավելի արագ է ճկվել, քան Մեծ Սևանի ճկվածքը:

ՍԵՎԱՆ–ՀԱԳԱՐԻՒ ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԳՈՏԻ, ՀՀ արլ. և Արցախի արմ. մասերում: Ձգվում է հս–արմ–ից հվ–արլ. (երկ.՝ մոտ 200 *կմ*, լայն.՝ 10– 30 *կմ*): Ընդգրկում է Սևանի ու Արցախի լ–շղթաները և Հագարի գետի միջին ու ստորին ավազանները: Խորք. բեկվածքի վրա տեղադրված գրաբեն–գոգածալք է: Ապարներն ալպ. տեկտ. կազմությամբ պարբերաբար ենթարկվել են ճզմման և ծալքավորման: Ժամանակակից ռելիեֆը հետմիոցենյան տեկտ. ուղղաձիգ շարժումների հետևանք է:

ՍԵՎԱՆ–ՀՐԱԶԴԱՆԻ ԿԱՍԿԱԴ, ջրէկների Սևանի կասկադ, *Հրազդան* գետի վերին և միջին հոսանքներում ջրէկների համալիր, որոնք էներգետիկ նպատակներով օգտագործում են *Սևանա լճի* ջրի արհեստ. թողքերը և Հրազդան գետի բնական հոսքը: Ջրէկների շին–ը սկսվել է 1930–ին, ավարտվել 1962–ին: Կասկադը բաղկացած է 6 ջրէկից [Սևանի, Աթարբեկյանի (այժմ՝ Հրազդանի), Գյումուշի (այժմ՝ Արգելի), Արզնիի, Քանաքեռի, Երևանի], որոնց սահմանված գումարային հզորությունը 556 *ՄՎտ* է, էլեկտրաէներգիայի տարեկան արտադրանքը՝ 2,31 մլրդ *կՎտ.ժ*: Սևանա լճի մակարդակի պահպանման նպատակով 1978–ից կասկադն աշխատում է ոռոգման համար լճից ջրի բացթողման գրաֆիկով:

ՍԵՎԱՊՏՈՒՂ ԱՐՈՍԵՆԻ, վարդազգինների ընտանիքի թուփ: Ուտելի պտուղները պարունակում են շաքար, օրգ. թթուներ, C և P վիտամիններ: Բերքատվությունը՝ 50–70 *գ*/*հա*: Օգտագործում են կանաչապատման համար: Մեղրատու է:

ՍԵՎԱՍՏՅԱՆՈՎ Վիտալի Իվանովիչ (1935–2010), ռուս տիեզերագնաց օդաչու, գնդ.: ԽՄ հերոս (1970, 1975): Տեխ. գիտ. թեկնածու (1965): ԽՍՀՄ ս. վ. վ. (1970): Կատարել է 2 տիեզ. թռիչք (1970, 1975)՝ 80 օր 16 *ժ* 19 *ր* ընդհ. տևողությամբ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1978):

ՍԵՎԱՍՏՈՊՈԼ, (1797–1801–ին՝ Ախտիար), ք. ՌԴ Ղրիմի Հանրապետությունում: ՌԴ Սևծով. նավատորմի գլխ. հենակետը: Բն.՝ 337,6 հզ. (2010): Նվինգստ՝ Սև ծովի ափին: Զարգացած են նավաշինությունը, նավանորոգման, քիմ., սննդի (այդ թվում՝ ձկան), թեթև, փայտամշակման արդ–յան ճյուղերը, շինանյութերի արտադր–յունը, գինեգործությունը: Ս–ում է Ա. Վ. Լունաչարսկու անվ. ռուս. դրամատիկ. թատրոնը, թանգարաններ (Սևծով. նավատորմի, Գեղարվ–ի ևն):

Հնում Ս–ի շրջակայքում եղել է հին–հուն. Խերսոնես ք–ը: Ս. հիմնադրվել է 1783–ին՝ որպես ռազմածով. նվինգստ և ամրոց: Փառաբանվել է Ղրիմի պատերազմի (1854–55) և ՀՄՊ–ի ժամանակ հերոս. պաշտպ–յունների համար: 1945–ից՝ հերոս քաղաք: Ս–ում են «Սևաստոպոլի պաշտպանությունը 1854–55–ին» համայնապատկերը (1902–04, նկարիչ՝ Ֆ. Ա. Ռուբո), «Սապուն–Գորայի գրոհը 1944–ի մայիսի 7–ին» տրամանկարը, Պետրո-

պավլովյան եկեղեցին (1840–44), Կոմսի նավակայանը (1846) ևն:

ՍԵՎԱՍՏՈՊՈԼԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, 1. **1854–55**, Սևաստոպոլի (ռուս. Սևծով. նավատորմի գլխ. բազա) պաշտպանը 1854-ի սեպտ. 13(25)–1855-ի օգոստ. 27 (սեպտ. 8)-ին՝ Ղրիմի պատերազմի ժամանակ (տես *Ղրիմի պատերազմ 1853–56*): Ռուս. զորքերը փոխծովակալներ Վ. Ա. Կոռնիլովի, Պ. Ս. Նախիմովի և գեն. Դ. Ե. Օստեն-Սեկենայի հրամանատարությամբ 349 օր պաշտպանել են Սևաստոպոլը՝ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Թուրքիայի և Սարդինիայի (1855-ից) գերակշռող ԶՈՒ-ից:

Ս. պ-յանը հայերից մասնակցել են ծովակալ Լազար *Սերեբրյակովի* որդիները:

2. **1941–42**, ՀՄՊ-ի ժամանակ Մերձծով. բանակի (գեն-մայոր՝ Ի. Ե. Պետրով) և Սևծով. նավատորմի (փոխծովակալ՝ Ֆ. Օկտյաբրսկի) զորքերը հետ են մղել (30.10.1941–04.07.1942) գերմ. 11-րդ բանակի (գեն-գնդ.՝ Է. Մանշտեյն) հարձակումները և պահել Սևաստոպոլը՝ կաշկանդելով հակառակորդի խոշոր ուժեր: 1942-ի հունիս–հուլիսին Սևաստոպոլի շրջափակված կայազորը 4 շաբաթ մարտնչել է հակառակորդի գերակշիռ ուժերի դեմ և թողել է քաղաքն այն ժամանակ, երբ պաշտպ-յան բոլոր հնարավորություններն սպառվել են: Ս. պ-յանը մասնակցել են 3800-ից ավելի հայեր:

ՍԵՎԱՎԵՐԱԿ, **Սևերակ, Սևերեկ**, գք Դիարբեքիրի նհնգ-ում՝ Հայկ. Տավրոսի լ-բազուկ Սև լ-ների և Եփրատի միջև՝ Դիարբեքիր–Ուրֆա ճանապարհին: Համանուն գվոկ-ի կենտրոնը: ԱՀՊ-ի նախօրեին Ս-ում բնակվել է շուրջ 2500 հայ, գործել են եկեղեցի՝ Սբ Թորոս, և 5 վարժարան: 1915-ին հայերի զգալի մասը զոհվել է Ս-ում և Ուրֆա տանող ճանապարհին: Դեյր էզ-Զոր աքսորվածներից փրկվել են աննշան թվով մարդիկ: Այժմ Թուրքիայի Ուրֆա իլի Սիվերեք գվո-ի կենտրոնն է:

ՍԵՎԱՎԻՆՋ ՔԱՐԱԹՈՒՉՆԱԿ (Oenanthus finschii), *կեռնախնձորի* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող: Մարմնի երկ.՝ 14, թևերի բացվածքը՝ 25–27 *սմ*, կ. զ.՝ 17–30 *գ*: Ապրում է թփուտածածկ կիսաանապատներում, քարքարոտ լ-լանջերին: Մնվում է անող-նաշարներով, սերմերով: Դաշտ. պայմաններում Ս. ք. (հատկապես՝ արուն) անզգույշ է, էզը թխասպլման ընթացքում թաքնված է: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՍԵՎԱՏԵՍԱԿ (Poterium), **սևագլխիկ**, վարդազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 20 տեսակ, ՀՀ-ում՝ 2 (բազմակող և խավապտուղ:) Առաջինը ՀՀ-ում տարածված է ամենուրեք, 2-րդը՝ Սյունիքի մարզում: Պատրաստուկներն օգտագործում են թարախ. վերքերի բուժման համար: Կիրառվում է նաև օծանելիքի արտադր-յան մեջ: Մեղրատու է:

ՍԵՎԱՓՈՐ ԴՈՒԼՈՆ (Pterocles orientalis), *դոդոնների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 33–35, թևերի բացվածքը՝ 70–73 *սմ*, կ. զ.՝ 410–550 *գ*: Ապրում է կիսաանապատներում, չոր լ-տափաստաններում: Մնվում է սերմերով, դալար, կանաչ խոտաբույսերով:

ՍԵՎԵՌՆ (Severn), 1. գետ Մեծ Բրիտանիայում: Երկ.՝ 310 *կմ* (էստուարի հետ՝ 391 *կմ*), ավազանը՝ 21 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 250 *մ*^{3}/*վ*: Թափվում է Բրիստոլի ծոցը: Նավարկելի է մինչև Ստաուրպորտ ք.: Ափին են Վուսթեր, Գլոսթեր ք-ները: 2. Գետ՝ Կանադայում: Երկ.՝ 981 *կմ*, ավազանը՝ 101 հզ. *կմ*^{2}: Սկիզբ է առնում Լավրենտյան բարձր-յունից, թափվում Հուդզոնի ծոցը: Գետաբերանին է Ֆորտ Սևեռն ք.:

ՍԵՎԵՌՅԻ Անդրեյ Բորիսովիչ (1913–1987), ռուս աստղաֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1968): Սոց. աշխ. հերոս (1973): Եղել է Ղրիմի աստղադիտարանի տնօրենն (1952–1987): Աշխ-ները վերաբերում են Արեգակի ֆիզիկային և տես. աստղաֆիզիկային: Ուսումնասիրել է Արևի գունոլորտային բռնկումները, մագնիս. դաշտը, աստղերի ներքին կառուցվածքը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1952, 1984):

ՍԵՎԵՌՅԻ ԴՈՆԵՑ, գետ ՌԴ-ում և Ուկրաինայում, Դոնի աջ վտակը: Սկիզբ է առնում Միջինռուս. բարձր-յունից, ակունքի մոտ տրոհվում է 3 բազուկների: Երկ.՝ 1053 *մ*, ավազանը՝ 98,9 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 149 *մ*^{3}/*վ*: Վերին հոսանքում է Պեչենգայի ջրամբարը: Ռայգորոդ քտա-ի մոտ սկսվում է Ս. Դ.–Դոնբաս ջրանցքը: Նավարկելի է ափից 315 *կմ*: Ափին են Բելգորոդ (ՌԴ), Իզյում, Լիսիչանսկ (Ուկրաինա) և այլ ք-ներ:

ՍԵՎԵՌՈՒՆ ՎԻՃԱԿՆԵՐ, **օբսեսիաներ**, ակամա մտքեր, հիշողություններ, կասկածներ, վախեր ևն, որոնք ուղեկցվում են դրանց հիվանդագին լինելու գիտակցումով և անհաղթահարելիության զգացումով:

«ՍԵՎԵՐ», բարձր լայն-յունների հետազոտման ռուս. օդ. գիտ. արշավախումբ, որը «Հյուսիսային բևեռ» դրեյֆող և բևեռ. կայանների հետ իրականացրել է Արկտիկայի բնության համալիր դիտարկում: 1-ին «Ս.»-ի գիտ. արշավախումբը կազմակերպվել է 1937-ին:

ՍԵՎԵՐՈՒԻՆ Վասիլի Միխայլովիչ (1765–1826), ռուս. հանքաբան և քիմիկոս, ռուս. հանքաբան. դպրոցի հիմնադիրներից: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1793): Կազմել է Ռուսաստանի հանքաբանության և օգտ. հանածոների ամփոփագիր, ներմուծել (1798) հանքերի պարագենեզիսի մասին հասկացությունը: Աշակել է քիմիայի, բուսաբ-յան և հանքաբանության ռուս. գիտ. եզրութաբանությունը: Ս-ի անունով կոչվել է հրաբուխ Կուրիլյան կղզիներում:

ՍԵՎԵՐԻ (Savery) Թոմաս (1650–1715), անգլիացի ճարտարագետ, ջերմ. շարժիչի ստեղծողներից: Հայտնագործել է (1698) հանքահորերից ջրի դուրսմղման շոգեմեքենան:

ՍԵՎԵՐԻՆ Գայ Իլյիչ (1926–2008), ռուս մեխանիկոս: ՌԳԱ ակադ. (2000): Սոց. աշխ. հերոս (1982): Աշխ-ները վերաբերում են թռիչք. ծայրահեղ պայմաններում մարդու կենսամեխանիկային, վթար. իրավիճակներում անձնակազմի պաշտպ-յան և փրկության եղանակներին: Լենինյան (1965), ԽՍՀՄ Պետ. (1978) մրց-ներ:

ՍԵՎԵՐԻՆ Եվգենի Սերգեևիչ (ծ. 1934), ռուս. կենսաբան: ՌԳԱ թղթ. անդամ (1991): Ս. Ե. *Սևերինի* որդին: Աշակել է բջջ. կենսընթացների կարգավորման մոլ. հիմունքները, հետազոտել ֆերմենտների կառուցվածքը և ազդեցության մոլ. մեխանիզմները:

Լենինյան (1990), ԽՍՀՄ Պետ. (1984), Վ. Ս. Գուլևիչի անվ. (1996, 2007) մրց-ներ:

ՍԵՎԵՐԻՆ Սերգեյ Եվգենևիչ (1901–1993), ռուս. կենսաքիմիկոս: ՌԳԱ (1968), ՌԲԳԱ (1948) ակադ.: Սոց. աշխ. հերոս (1971): Ե. Ս. *Սևերինի* հայրը: Ուսումնասիրել է մկան. հյուսվածքի (կմախք. մկանունք, սրտամկան) կենսաքիմիան, արյան (նրա պահածոյացման) ֆերմենտաբանության հարցերը: Լենինյան մրց. (1982):

ՍԵՎԵՐՈԴՈՆԵՑԿ, ք. (1958-ից) Ուկրաինայում՝ Սևեռնի Դոնեց գետի ափին: Բև.՝ 113,3 հզ. (2010): Կան քիմ. (ամոնիակ, ազոտ. պարարտանյութ ևն), մեքենաշին. ձեռն-ներ:

ՍԵՎԵՐՈԴՎԻՆՍԿ, ք. (1938–57-ին՝ Մոլոտովսկ) ՌԴ Արխանգելսկի մարզում՝ Սպիտակ ծովի ափին՝ Հս. Դվինայի դելտայում: Երկթող. կայարան է: Բև.՝ 188,9 հզ. (2009): Հիմնադրվել է 1936-ին:

ՍԵՎԵՐՈՍՆԵՐ (Severi), հռոմ. կայսրերի հարստություն՝ 193–235-ին: Առավել նշանավորներն են ***Սեպտիմոս Սևերոսը, Կարակալլան,*** Ալեքսանդր Սևերոսը: Ս-ի քաղ-յունը հիմնականում ունեցել է հակածերակուտ. բնույթ:

Հայաստանի հանդեպ Ս-ի քաղ-յունը եղել է հակասական. Սեպտիմոս Սևերոսը վարել է սիրաշահելու, Կարակալլան՝ նվաճող. անհաջող քաղ-յուն:

ՍԵՎԵՐՅՈՎ Ալեքսեյ Նիկոլաևիչ (1866–1936), ռուս. կենսաբան, կենդանիների էվոլյուցիոն ձևաբանության հիմնադիրը: ՌԳԱ (1920), ԽՍՀՄ ԳԱ (1925), Ուկր. ԳԱ (1925) ակադ.: Ն. Ա. *Սևերցովի* որդին: Աշխ-ները վերաբերում են էվոլյուցիոն ձևաբանությանը և էվոլյուցիայի օրինաչափությունների հաստատմանը: Ստեղծել է ֆիլէմբրիոգենեզի տեսություն:

ՍԵՎԵՐՑՈՎ Նիկոլայ Ալեքսեևիչ (1827–1885), ռուս. կենդանաբան, կենդանաաշխարհագետ, ճանապարհորդ, Ռուսաստանում էկոլոգիայի և էվոլյուցիոն տեսության հիմնադիրներից: Ա. Ն. *Սևերցովի* հայրը: 1857–79-ին հետազոտել է Միջին Ասիան և Պամիրը, այն առանձնացրել է որպես առանձնահատուկ լեռն. համակարգ, տվել նրա բնության առաջին համալիր աշխարհագր. բնութագիրը:

ՍԵՎԻԼԻԱ, (Sevilla), ք. Իսպանիայի հվ-ում, համանուն պրովինցիայի և Անդալուզիայի ԻՄ վարչ. կենտրոնը: Բև.՝ 707 հզ. (2010): Նվինգստ՝ Գվադալքվիվիր գետի ափին (հասանելի է ծով. նավերին): Ունի օդանավակայան: Պատմաճարտ. հուշարձաններից են մավրիտան. Ալկասար դղյակը (XIV–XVI դդ.), գոթ. եկեղեցիները (XIII–XIV դդ.), ուշգոթ. տաճարը (1402–1506), Կասա Լոնխա սակարանը (1583–98) ևն: Հնում եղել է իբեր. տուրդետան ցեղի կենտրոնը՝ Հիսպալիս անունով: 1492-ին Ս-ի նվինգստ-ից է Ք. Կոլումբոսը սկսել իր 1-ին արշավը:

ՍԵՎԻԼԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Իսպանիայի խոշորագույն և հնագույն համալսարաններից: Հիմնադրվել է 1505-ին: Մինչև 1551-ը՝ հումանիտար քոլեջ: 2016-ին ուներ շուրջ 75 հզ. ուսանող:

ՍԵՎԾՈՎՅԱՆ ՆԱՎԱՏՈՐՄ (ՍՆ), Ռուսաստանի ՌԾՆ-ի օպերատիվ-ռազմավար. միավորում Սև ծովում: Հիմնադրվել է 1783-ին: Մասնկցել է Ռուս-թուրք., Ղրիմի և Առաջին համաշխ. պատերազմներին: 1905-ին տեղի են ունեցել ապստամբություններ ՍՆ-ի «Պոտյոմկին» զրահանավի և «Օչակով» հածանավի վրա: ՀՄՊ-ի ժամանակ մասնակցել է Օդեսայի, Սևաստոպոլի, Հս. Կովկասի պաշտպ-յանը, Կերչ-Թեոդոսիայի, Կերչ-Էլտիգենի և այլ գործողությունների, Ղրիմի, Օդեսայի ազատագրմանը: 1995-ի և

1997-ի երկկողմանի համաձայնությամբ՝ բաժանվել է ՌԴ ՄՆ-ի և Ուկրաինայի ՌԾՆ-ի, որոնք խարսխում են Սևաստոպոլի տարբեր ծովախորշերում:

ՄԵՎԾՈՎՅԱՆ ՆԵՂՈՒՅՆԵՐԻ ՌԵԺԻՄ, Սևծով. նեղուցներով (Բոսֆոր, Դարդանել) նավարկելու միջազգ-իրավ. կարգ: Սահմանվել է Մոնտրյոյում (տես *Մոնտրյոյի խորհրդաժողով 1936*):

ՄԵՎԿԱՏԱՐ, լ-զագաթ Գեղամա լ-շղթայի հս. կատար. մասում՝ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի սահմանագլխին՝ Ծաղկաշենն գ-ից 12 *կմ* հս-արմ.: Բարձր.՝ 3225 *մ*:

ՄԵՎՀԱՐՅՈՒՐԱԿԱՅԻՆՆԵՐ, ծայրահեղ աջ կազմ-յան անդամներ Ռուսաստանում 1905–17-ին: Հանդես են եկել միապետականության, մեծապետ. շովինիզմի և հակասեմականության կարգախոսներով: Առաջնորդներն ու գաղափարախոսները՝ Ա. Ի. Դուբրովին, Վ. Մ. Պուրիշկևիչ, Ն. Ե. Մարկով: Փետր. հեղ-յունից (1917) հետո կազմ-յուններն արգելվել են:

ՄԵՎՈՅԱՆ Սանասար Սիմոնի (1922–1962), սերժանտ: Փառքի երեք աստիճանների շքանշանների ասպետ (1944, 1945, 1946): ՀՄՊ-ին մասնակցել է *Թամանյան դիվիզիայի* կազմում: Շքանշանների արժանացել է Ղրիմի ազատագրման, Վիսլայի գետանցման և Ֆրանկֆուրտի գրավման մարտերում ցուցաբերած խիզախության համար:

ՄԵՎՈՅԱՆ Վարազդատ Հմայակի (1914–1987), լուսանկարիչ: ՀԽՍՀ վաստ. ժուռնալիստ (1974): Հայաստանում գունավոր լուսանկարչության հիմնադիրներից:

ՄԵՎՈՏԻԿ, մշակաբույսերի (հիմնականում՝ սածիլների և բույսերի ծիլերի) հիվանդություն: Հարուցիչները մակաբույծ սնկերն ու բակտերիաներն են: Արտահայտվում է արմատավզիկի կամ ցողունի հիմքի գորշացումով և փտումով: Հանդիպում է գրեթե ամենուրեք: Առավել վտանգավոր է կարտոֆիլի Ս.:

ՄԵՎՈՐԴԻՆԵՐ, *Ուրիք*՝նինգ-ում հաստատված ցեղ: Ենթադրվում է, որ պատկանել են սավիրների ցեղախմբին: IX դ-ի սկզբին մի մասն անցել է Ուտիք՝նինգ և ընդունել քրիստոնեություն: Հայաստանում նրանք իրենց՝նահապետ Գևորգ Սևի կամ Սևկոյի անվամբ կոչվել են Ս., իսկ Ուտիք՝նինգ-ի մի մասը՝ նաև Սևորդիք կամ Սևորդաց գվո: X դ-ում Ս. առանձին զորամաս են ունեցել *Սմբատ Ա.* Բագրատունու բանակում: Ս. աստիճանաբար հայացել են և X դ-ից հետո այլևս չեն հիշատակվում:

ՄԵՎՈՐԴՅԱՅ ԼԵՌՆԱՇՂԹԱ, ՀՀ Լոռու մարզում, Գուգարաց լ-շղթայի արմ. լ-բազուկներից՝ Դերեդ գետի և Մարց ու Քարինջ վտակների միջև: Առյգն բարձր.՝ 2245 *մ* (Դժարսար լ.), երկ.՝ 15 *կմ*: Միջին բարձր-յան ծալքաբեկորավոր լ-շղթա է: Լանջերն անտառածածկ են՝ էրոզային խորը հովիտներով մասնատված:

ՄԵՎՉԵՆԿՈ Անտոն Նիկիֆորովիչ (1903–1978), բելառուս ֆիզիկոս: ԲԽՍՀ ԳԱ ակադ. (1953), ԲԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1967): Սոց. աշխ. հերոս (1971): Ֆիզիկայի բելառուս. դպրոցի հիմնադիրը:

ՄԵՎՐ (Sèvres), Փարիզի հվ-արմ. արվարձանը Սեն գետի ափին: Բն.՝ 25 հզ. (2010): Զարգացած է հախճապակե իրերի արտադր-յունը: Կա խեցեգործության ազգ. թանգարան: 1920-ին Ս-ում կնքվել է *Սևրի հաշտության պայմանագիրը*:

ՄԵՎՐԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 1920, ստորագրել են օգոստ. 10-ին *Սևրում* Թուրքիայի սուլթան. կառ-յունը և ԱՀՊ-ում հաղթած դաշնակից պետությունները (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա, Հունաստան, Հայաստան ևն): Չնակերպել է Օսմ. կայսրության տարածքի բաժանումը: Վերացվել է 1923-ի Լոզանի պայմանագրով (տես *Լոզանի խորհրդաժողով*):

Ս. հ. պ. Հայաստանի առաջին հանրապետության անունից ստորագրել է Ավետիս *Ահարոնյանը*: Նա և արևմտահայության ներկայացուցիչ, Ազգ. պատվիրակության ղեկ. *Պողոս Նուբարը* գլխ. դաշնակից պետությունների հետ կնքել են լրացուցիչ պայմանագիր՝ ազգ. փոքրամասնությունների իրավունքների, դիվանագիտ. և այլ հարցերի վերաբերյալ. Ս. հ. պ-ի 88–93-րդ հոդվածները վերաբերում են Հայաստանին: Վերջինս պետք է ստանար 90 հզ. *կմ*^{2}, իսկ Հայաստանի Հանրապետության հետ կունենար 161 330 *կմ*^{2} տարածք՝ Սև ծով ելքով: Տես նաև *Վիլսոնի իրավարարական որոշում*:

ՄԵՎՐԻԼԵՍԿՈՒ (Sâvulescu) Տրայան (1889–1963), ռումին բուսաբան: Ռումինիայի ԳԱ ակադ. (1938, նախագահ՝ 1948–60-ին, պատվ. նախագահ՝ 1960-ից), ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1958): Աշխ-ները վերաբերում են սնկախտաբանության և բույսերի պաշտպ-յան հարցերին:

ՄԵՎՈՒԿ, *կաղամբազգիների* (խաչածաղկավորներ) ընտանիքի միամյա աշնանացան կամ գարնանացան բույս: Մշակության մեջ հայտնի է 6 հզ. տարուց ավելի: Հնուց մշակել են Հնդկաստանում, որտեղից էլ հավանաբար տարածվել է միջերկրածով. և այլ երկրներ: ՀՀ-ում մշակվել է որպես միջանկյալ և խոզաբուծության բույս: Կերարույս է բոլոր գղտ. կենդանիների համար:

ՄԵՎՈՒԿ, Սևուկ բերդակ, Սեավքար բերդ, բերդ Տուրուբերան նինգ-ի *Մարդաղի* գվո-ում: Գվո-ի իշխանանիստ ու եպիսկոպոսանիստ կենտրոնը: 1001-ից անցել է Բյուզանդիային: Այնուհետև բերդի մասին տեղեկություններ չեն հանդիպում: Հետագայում թուրքերը կիսավեր Ս. թարգմանաբար անվանել են Կարակալե (այժմ՝ Թուրքիայի Թևքմանի գվոկ-ում):

ՄԵՎՈՒԿ ԿԱՐՄՐԱՏՈՒՏ (Poenicurus ochrurus), *կեռնեխների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է: Մարմնի երկ.՝ 14,5, թևերի բացվածքը՝ 23–26 *սմ*, կ. զ.՝ 13–15 *գ*: Բնակվում է քարքարոտ լանջերին, քաղաքամերձ տարածքներում: Մնվում է անողնաշարներով, պտուղներով:

ՄԵՎՈՒԿ ԿՅԱՆՐ (Tringa ochropus), *մորակտցարների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 21–24, թևերի բացվածքը՝ 57–61 *սմ*, կ. զ.՝ 70–80 *գ*: Ապրում է ջրանցքների, ճահճուտների խիտ բուսածածկով քոդարկված ափերին: Թաքստոցից դուրս է թռչում հանկարծակի: Մնվում է որդերով, ջր. անողնաշարներով:

ՄԵՎՈՒՄՅԱՆ (Սևումյան-Արզումանյան) Լյուսի (Խանդանյան Լուսաբեր Երեմիայի, 1892–1969), դերասանուհի, երգչուհի (սոպրանո): Օվի *Սևումյանի* կինը: 1911-ից՝ Թիֆլիսի Հայոց դրամատիկ. ընկ-յան թատերախմբի դերասանուհի (Սեղա՝ Լ. Շանթի «Հին աստվածներ», Կեկել՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», Օֆելյա՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», ևն): 1922-ից՝ Միլանում, որտեղ մշակել է ձայնը, 1930–40-ին՝ «Լա Սկալայի» մեներգչուհի (Չիո-չիո սան, Միմի՝ Ջ. Պուչչինիի «Չիո-չիո սան», «Բոհեմ», ևն): Գր. հայ-ի է փոխադրել Սունդուկյանի «Պեպոն» (1960):

ՄԵՎՈՒՄՅԱՆ Օվի (Հովհաննես) Մամիկոնի (1878–1920), ռեժ., դերասան, թատեր. գործիչ: Լյուսի *Սևումյանի* ամուսինը: Հայ թատրոնի բարեփոխիչ, ռեալիստ. թատրոնի աջակից: 1917-ին Թիֆլիսում հիմնել է ստուդիա, 1918-ին Պյատիգորսկում՝ խորհրդ. առաջին հայկ. պետ. թատրոնը: Բեմադրել է Ֆ. Շիլլերի «Ավազակներ», Գ. Սունդուկյանի «Պեպո», Լ. Ն. Տոլստոյի «Կենդանի դիակ» և այլ գործեր: Դերերից են՝ Էլիզբարյան (Շիրվանզադեի «Պատվի համար), Ուրիել (Կ. Գուցկովի «Ուրիել Ակոստա»), Քաղաքագլուխ (Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր») ևն:

ՄԵՎՈՒՆՑ (Գրիգորյան) Գարեգին Սևիի (1911–1969), գրող, խմբ.: ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1967): 1946–52-ին՝ «Պիոներ» ամսագրի խմբ., 1954–59-ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար: Հեղինակ է «Վիշապասարի աղջիկը» (1945), «Չիկա» (1968) պատմվածքների ժող-ների, «Ծովախորշում» (1938) վիպակի, Իրանի ժողղ-ի ազգ-ազատագր. պայքարի մասին «Թեհրան» (գիրք 1–2, 1952), նաև «Գերիներ» (1958), «Պետական գաղտնիք» (1967), «Կյանքը թևերի վրա» (1984) վեպերի, «Իրանական նոթեր» (1949), «Դանուբից Գանգես» (1957) և նոթագր-ուղեգր. այլ երկերի:

ՄԵՎՔԱՐԵՅԻ ՍԱՔՈ (Ծովանյան Սարգիս Սարիբեկի, 1870–1908), ազգ-ազատագր. շարժման գործիչ, ֆիդայի: Եղել է *Խանասորի արշավանքի* (1897) հեծելախմբի հրամ.: 1905-ի հայ-թաթար. ընդհարումների ժամանակ կազմակերպել է Ղազախ-Շամշադինի ինքնապաշտպ-յունը: Որպես հեծելախմբի հրամ.՝ 1907-ին ուղևորվել է Պարսկաստան. ճանապարհին հիվանդացել է և մահացել:

ՄԵՎՔԱՐ-ՍԱԲԻԳՅՈՒՂԻ ՄԱՆԳԱՆԻ ՀԱՆՔԱՎԱՅՐ, ՀՀ Տավուշի մարզում: Հայտնի է հնագույն ժամանակներից: Հանքանյութը կազմված է կրիպտոմելան, հոլանդիտ, մանգանիտ միներալներից: Մանգանի միջին պարունակությունը 24–27 % է, հանքամարմինների հաստ.՝ 2,80 *սմ*, երկ.՝ մինչև 500 *մ*:

ՄԵՏԵՖՃՅԱՆ Ռոմանոս Կարապետի (1837–1905), դերասան, դրամատուրգ: 1861-ից՝ Կ. Պոլսի Արևելյան թատրոնի դերասան: Հեղինակ է «Վարդան Մամիկոնյան, փրկիչ հայրենյաց» (բեմ.՝ 1867), «Հայկ Դյուցազն» և այլ պատմ. ողբերգությունների, «Արշավանք թաթարաց», «Անգութ Զարուհի» և այլ պիեսների (բոլորը բեմադրվել են Կ. Պոլսի հայկ. թատրոններում):

ՄԵՏԻՖ, ք. Ալժիրի հս-արլ-ում, համանուն վիլայեթի վարչ. կենտրոնը: Բն.՝ 235 հզ. (2010): Գղտ-յան շրջանների առևտր. կենտրոն է: Հիմնադրել են հռոմեացիները մ. թ. ա. I դ-ում:

ՄԵՏՅԱԼՅԱ, Սետելե (Setälä), Էմիլ Նեստոր (1864–1935), ֆիննո լեզվաբան: Ֆինլանդիայի գիտ-յունների և գրկ-յան ակադ-ի նախագահ (1913–14): Ուգրա-ֆիննո. պատմահամեմատ. լեզվար-յան հիմնադիրը: Առաջադրել է բաղաձայնների աստիճան. դասակարգման յուրօրինակ տեսություն: Ուգրա-ֆիննո. լեզուների համար մշակել է տառադարձման համակարգ:

ՄԵՏՏԵՐՆԵՐ (անգլ.՝ setter, set – ուղղակեցվացք), երկարամազ որսաշների ցեղեր:

Օգտագործում են փետրավորներին որսալու համար: Բուծում են անգլ., շոտլանդ. և իռլանդ. Ս.:

ՍԵՏՈՒԲԱԼ (Setúbal), ք-նվինգստ Պորտուգալիայում՝ Ատլանտ. օվկ-ի ափին: Բն.՝ 123 հզ. (2010):

ՍԵՐ, անձնական խորը զգացմունք, այլ անձի, մարդկային հանրույթի կամ գաղափարի նկատմամբ մղում: Դից-յան մեջ և պոեզիայում՝ տիեզ. ուժ, որը նման է ձգողության ուժին: ***Պլատոնի*** մոտ Ս.՝ ***Էրոսը***, հոգևոր վերածնության շարժիչ ուժն է (տես ***Պլատոնական սեր***): Իր ժամանակակից ձևով սեռական Ս.՝ որպես անհատական-ընտրող. զգացմունք, մարդկության պատմ. զարգացման արգասիք է:

ՍԵՐԱՄ (Céram), միջկղզ. ծով Մալայան կղզեխմբում: Մակերեսը՝ 161 հզ. *կմ*², խոր.՝ մինչև 5318 *մ*: Ափերին կան բազմաթիվ բուստ. խութեր:

ՍԵՐԱՄ, լեռնոտ կղզիներ Մոլուկկյան կղզիների համակարգում՝ Ինդոնեզիայում: Տարածքը՝ 17,1 հզ. *կմ*², բարձր.՝ մինչև 3027 *մ*: Ծածկված է արևադարձ. խոնավ անտառներով:

ՍԵՐԱՊԻՍ (Սարապիս), պտղաբերության, բնության տարեր. ուժերի և անդրշիրիմ. աշխարհի աստվածը հելլենիստ. Եգիպտոսում (մ. թ. ա. IV դ.): Ս-ի կերպարում միավորվել են եգիպտ. ***Օսիրիս*** և ***Ապիս*** աստվածների պաշտամունքները: Հաճախ նույնացվել է ***Զևսի*** հետ:

ՍԵՐԱՖԻՄՈՎԻՉ (Պոպով) Ալեքսանդր Սերաֆիմովիչ (1863–1949), ռուս գրող: Հեղինակ է «Ավազներ» (1908) վիպակի, «Քաղաքը՝ տափաստանում» (1912), «Երկաթի հեղեղ» (1924, հայ.՝ 1927) վեպերի, նաև պատմվածքների: Հայ. հրատարակվել են նաև «Կաթիլը» (1911), «Սառցի վրա» (1928), «Մի գիշեր ածխահանքում» (1930) գործերը, «Պատմվածքներ» (1926) ժող-ը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943):

ՍԵՐԲԱ-ՉԵՌՆՈԳՈՐՅԱՆ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ 1876–78, Սերբիայի և Չեռնոգորիայի մղած ազատագր. պատերազմները Օսմ. կայսրության դեմ: 1876-ի հունիսին Սերբիան և Չեռնոգորիան պատերազմ են հայտարարել Թուրքիային: Վերջինս պարտության է մատնել Սերբիային: Թուրք. կառ-յանը ներկայացրած (1876-ի հոկտ.) Ռուսաստանի վերջնագրի շնորհիվ կովող կողմերը զինադադար են կնքել, իսկ 1877-ի փետրին Սերբիան հաշտություն է կնքել Օսմ. կայսրության հետ՝ նախապատերազմ. վիճակը վերականգնելու պայմանով (Չեռնոգորիան չի ստորագրել հաշտության պայմանագիրը): 1877-ի ապրիլին՝ Չեռնոգորիան, իսկ դեկտ-ին Սերբիան վերսկսել են պատերազմը Թուրքիայի դեմ, որը դարձել է 1877–78-ի ռուս-թուրք. պատերազմի բաղկացուցիչ մասը:

ՍԵՐԲԵՐ (ինքնանվանումը՝ սրբի), ժողդ, Սերբիայի հիմն. բնակչությունը (6,2 մլն, 2002): Ապրում են նաև Բոսնիա և Հերցեգովինիայում (1,4 մլն), Չեռնոգորիայում (250 հզ.), Խորվաթիայում (200 հզ.), Սլովենիայում (39 հզ.), Մակեդոնիայում են: Լեզուն՝ սերբախորվաթ.: Հավատացյալները հիմնականում ուղղափառ են, կան նաև կաթոլիկներ, բողոքականներ, մահմեդականներ (սուննի):

ՍԵՐԲԻԱ (Srbija), պետություն Հվ. Եվրոպայում: Սահմանակից է Հունգարիային, Ռումինիային, Բուլղարիային, Մակեդոնիային, Կոսովոյին, Մոնտենեգրոյին, Բոսնիա և Հերցեգովինային և Խորվաթիային: Տարածքը՝ 88,4 հզ. *կմ*², բն.՝ 9,5 մլն (2009): Մայրաքաղաքը՝ *Բելգրադ*: Պետ. լեզուն՝ սերբ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Հավատացյալների մեծ մասն ուղղափառ քրիստոնյա է: Բաժանված է 2 ինքնավար երկրամասերի (Վոյեվոդինա, Կոսովո և Մետոհիա) և 29 օկրուգի: Անդամակցում է ՄԱԿ-ին, ԵԱՀԿ-ին, ԵԽ-ին, ԱՀԿ-ին ևն: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 10,4 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է մետաղներ ու մետաղ. իրեր, թեթև արդ-յան արտադրանք, մեքենաներ ու սարքավորումներ ևն, ներմուծում՝ նավթ, գազ, մեքենաներ ու սարքավորումներ, դեղորայք, քիմիկատներ, սննդամթերք, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ սերբ. դինար:

Ս-ի տարածքը սլավոններով բնակեցվել է VI–IX դդ-ում: IX դ-ում ընդունել են քրիստոնեություն: XII դ-ում սերբերն ստեղծել են խոշոր պետություն, XIV դ-ում՝ Սերբա-հուն. թագավորություն: 1389-ին երկիրն ընկել է օսմ. տիրապետության տակ, ազատագրվել է XIX դ-ում: 1830–33-ին ստացել է ինքնավարության կարգավիճակ, 1878-ի Բեռլինի վեհաժողովի որոշմամբ՝ լիակատար անկախություն, և զգալիորեն ընդլայնել տարածքը: 1882-ից դարձել է թագավորություն: 1912–13-ին մասնակցել է Բալկանյան պատերազմին: 1915–18-ին գրավել են ավստրո-հունգ. զորքերը: 1918-ին նախկին Ավստրո-Հունգարիայի տարածքի զգալի մասը միավորվել է Ս-ի հետ, և կազմավորվել է Սերբերի, խորվաթների և սլովենների թագավորությունը, որը 1929-ից կոչվել է Հարավսլավիա: 1941-ին երկիրը գրավել է Գերմանիան: 1944-ին ազատագրվել է խորհրդ. զորքերի օգնությամբ: 1945-ին Ս., Սլովենիայի, Խորվաթիայի, Բոսնիա-յի և Հերցեգովինայի, Մակեդոնիայի և Չեռնոգորիայի հետ ներառվել է Հարավսլավիայի Սոց. Դաշն. Հանրապետության կազմի մեջ, որը գոյատևել է մինչև վերջինիս փլուզումը (1991): 1992-ին Ս. և Չեռնոգորիան միասին կազմել են Հարավսլավիայի Միութ. Հանրապետությունը և ընդունել նոր սահմանադրություն: 2002-ին Հարավսլավիայի Միութ. Հանրապետությունը վերակազմավորվել է Սերբիայի և Չեռնոգորիայի Միության, որը գոյատևել է մինչև 2006-ը: 2006-ի հանրաքվեով Չեռնոգորիան նույնպես անջատվել է Ս-ից: 1999-ին Կոսովոյում սկսվել է հակամարտություն ալբանացիների (92 %) և սերբերի (6 %) միջև: ՆԱՏՕ-ի՝ երկրի ռմբակոծումից և Կոսովոյում ՄԱԿ-ի խաղաղապահներ տեղակայելուց հետո՝ 2008-ին, Կոսովոն ևս հռչակվել է անկախ պետություն, որը Ս. չի ճանաչել:

Հայերը Ս-ում բնակվել են XVII–XVIII դդ-ից, երբ այնտեղ վերաբնակվել են մեծ թվով պավլիկյաններ, ապա՝ նաև հայ առաքելականներ ու քաղկեդոնականներ: Առանձին հայ առևտրականներ բնակություն են հաստատել Բոսնիայում և Հերցեգովինայում: Բելգրադահայերի հոգևոր հովվությունն ստանձնել է Վնտ ՄՄ: Ս-ում հաստատված հայերը կառուցել են եկեղեցիներ գրեթե բոլոր այն բնակավայրերում, որտեղ եղել է հայերի շատ թե քիչ կազմակերպված համայնք: Սակայն իշխանությունների հրամանով եկեղեցիները ժամանակի ընթացքում ավերվել կամ քանդվել են (վերջին եկեղեցին քանդվել է Նովի Սադում 1963-ին): Եկեղեցիներին կից գործել են հայկ. դպրոցներ: 1932-ին բելգրադահայերը հիմնել են Հայոց միությունը՝ հայկ. ակումբով, որը գործել է մինչև 1941-ը և ժամանակավորապես դադարեցրել գործունեությունը ԵՀՊ-ի տարիներին, իսկ 1952-ին այն փակվել է: 1950-ական թթ-ին Հարավսլավիայի տարածքում բնակվել է շուրջ 2500–3000 հայ: 1990-ին ստեղծվել է Սերբ-հայկ. մշակութ. կենտրոնը: Շուրջ 1000 սերբահայեր բնակվում են մեծ մասամբ Բելգրադում, սակավաթիվ հայ ընտանիքներ կան Նովի Սադ և Սերեբրենիցա ք-ներում: Հայ համայնքի և Հայաստանից գաղթած հայերի մասնակցությամբ 1995-ին վերականգնվել է Ս-ի Հայոց միությունը (նախագահ՝ Միհոտրագ Վարդապետյան): 1993-ին Ս-ի խորհրդարանն ընդունել է Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև:

ՍԵՐԲԻԱՅԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԱԿԱԴԵՄԻԱ, Սերբիայի բարձրագույն գիտ. հաստատությունը: Ստեղծվել է 1886-ին Բելգրադում՝ գիտ. ընկ-յան հիմքի վրա՝ որպես Սերբիայի թագավոր. ակադ.: Վերակազմավորվել է 1947-ին: 2015-ին ուներ 8 ԳՀԻ, շուրջ 300 գիտաշխատող:

ՍԵՐԲՍԿԻ Վլադիմիր Պետրովիչ (1858–1917), դատահոգեբուժության հիմնադիրներից Ռուսաստանում, գիտ. դպրոցի ստեղծող: Հեղինակ է «Դատական հոգեախտաբանություն» (հ. 1, 2, 1896, 1900) ձեռնարկի: Մոսկվայի համալսարանի պրոֆ-ի (1902–11) պաշտոնից հրաժարվել է՝ որպես բողոքի նշան՝ ուսանողությանը հալածանքների ենթարկելու դեմ:

ՍԵՐԳԵԵՎ Եվգենի Միխայլովիչ (1914–1997), ռուս երկրաբան: ՌԳԱ ակադ. (1979): Աշխ-ները վերաբերում են ճարտարագիտ-երկրբ-յան և ջրաերկրբ-յան հարցերին: ԽՍՀՄ Պետ. (1977, 1988), Լենինյան (1982) մրց-ներ:

ՍԵՐԳԵԵՎ Իգոր Դմիտրևիչ (1938–2006), ռուս պետ. և ռազմ. գործիչ: ՌԴ մարշալ (1997): 1960-ից Հրթիռ. զորքերում վարել է հրամ-ճարտարագիտ. պաշտոններ: 1997–2001-ին՝ ՌԴ պաշտպ-յան նախարար:

ՍԵՐԳԵԵՎ (Վարդանբաբով) Սերգեյ Նիկոլայի (1900–1962), բալետմայստեր, բալետի արտիստ: Ուկր. ԽՍՀ ժող. արտիստ (1946): 1919–25-ին՝ Թիֆլիսի ՕԲԹ-ի մենապարող (ապա՝ բալետմայստեր), 1927–62-ին՝ Սվերդլովսկի, Կիևի (1942–53-ին՝ գլխ. բալետմայստեր) ՕԲԹ-ների բալետմայստեր (Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճը», Ա. Խաչատրյանի «Գայանե», Ս. Ս. Պրոկոֆևի «Մոխրոտը», ԵՕԲԹ-ում՝ «Խանդութ»՝ ըստ Ս. Սպենդիարյանի երաժշտության, ևն):

ՍԵՐԳԵԵՎ Վլադիմիր Գրիգորևիչ (1914–2009), ավտոմատ կառավարման բնագավառի ռուս գիտնական: Ուկր. ԽՍՀ ԳԱԱ ակադ. (1982): Սոց. աշխ. հերոս (1961, 1976): Աշխ-ները վերաբերում են ավտոմատ կառավարման բարդ համակարգերի նախագծման և դինամիկայի հարցերին:

Լենինյան (1957), ԽՍՀՄ (1967) և Ուկր. ԽՍՀ (1979) Պետ. մրց-ներ:

ՍԵՐԳԵՅ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՉ (1857–1905), մեծ իշխան: ***Ալեքսանդր II*** կայսեր որդին: Մեծ իշխանուհի Ելիզավետա

Ֆեոդորովնայի ամուսինը: Գեն–լեյտ. (1896): 1877–78–ի ռուս–թուրք. պատերազմի մասնակից: 1891–1905–ին՝ Մոսկվայի գեն–նահանգապետ, 1896–ից՝ Մոսկվայի ՋՕ զորքերի հրամ.: Սպանել է Էսէռ Ի. Պ. Կալյաևը:

ՍԵՐԳԻԵՎ, Պյոտր Գրիգորևիչ (1893–1973), ռուս մակաբուծաբան և համաճարակաբան: ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1944, փոխնախագահ՝ 1957–60–ին): Սոց. աշխ. հերոս (1963): ՌԽՖՍՀ առժողկոմ (1937): Ղեկավարել է մալարիայի դեմ պայքարի պետ. ինգամյա պլանի մշակումը, որի իրականացմամբ ապահովվել է մալարիայի՝ որպես զանգված. հիվանդության, վերացումը: Հունգարիայի ԳԱ պատվ. ակադ. (1960): ԽՍՀՄ Պետ. (1946, 1965), Դաուլինգի անվ. միջազգ. (1965) մրց–ներ:

ՍԵՐԳԻԵՎ ՊՈՍԱԴ, ք. (1919–ից, 1919–30–ին՝ Սերգիև, 1930–91–ին՝ Զագորսկ) ՌԴ Մոսկվայի մարզում: Երկաթղ. կայարան է: Բն.՝ 107,5 հզ. (2009): Հայտնի է խաղալիքների թանգարանը: Հիմնադրվել է 1782–ին՝ որպես պոսադ: Տրոիցե–Սերգիևյան մայրավանքի տարածքում են Մոսկվայի հոգևոր ակադ–ը, հոգևոր սեմինարիան, Վվեդենի և Պյատնիցկիի պոսադային եկեղեցիները (XVII–XVIII դդ.):

ՍԵՐԳԻՅ ՌԱԴՈՆԵԺՍԿԻ (1314 և 1321–ի միջև – 1392), ռուս եկեղեց. և պետ. գործիչ, Տրոիցե–Սերգիևյան մայրավանքի հիմնադիրն ու վանահայրը, սուրբ: Եղել է իշխան Դմիտրի Դոնսկոյի ազգ–ազատագր. քաղ–յան ոգեշնչողներից, ունեցել բազմաթիվ հայտնի աշակերտներ ու հետևորդներ: Իր հիմնադրած մենաստաններում սահմանել է հանրակացարան. կարգապահություն:

ՍԵՐԳՈՅԱՆ Ժիրայր Նշանի (1921–մ. թ. անհտ), երգիչ (բաս): Նիսի (1948), Լիոնի (1949), Ստրասբուրգի (1950) օպեր. թատրոնների, 1952–ից՝ Փարիզի «Գրանդ օպերայի», միաժամանակ՝ «Օպերա կոմիկի» մենակատար (Մեֆիստոֆել՝ Շ. Գունոյի «Ֆաուստ», Ֆիլիպ, Ամոնասրո՝ Ջ. Վերդիի «Դոն Կառլոս», «Աիդա», դոն Բազիլիո՝ Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», ևն):

ՍԵՐԵԲՐՅԱԿՈՎ, Լազար Մարկովիչ (Արծաթագործյան Ղազար Մարկոսի, 1795–1862), ռուս. ռազմածով. նավատորմի ծովակալ (1854): 1830–37–ին՝ Սևծով. և Բալթ. նավատորմերում նավերի հրամ.: 1838–ին հիմնադրել է Նովոռոսիյսկը: 1853–ի նոյեմբ. 7–ին Ս–ի գլխավորած նավատորմիղը ռմբակոծել է թուրքերի գրաված Նիկոլայի ամրոցը, դեկտ–ին Ս. ռազմերթ է իրականացրել Բաթում–Ռիզե գծով: 1854–ին՝ Սև ծովի հս–արլ. և Կովկասյան մասի ռազմանավերի հրամ.: Ս. մեծապես նպաստել է չերքեզահայերի ազգապահպանմանը՝ Ներսես Ե Աշտարակեցու աջակցությամբ: Ս–ի ջանքերով Նովոռոսիյսկում հիմնադրվել է հայկ. հոգևոր կենտրոն:

ՍԵՐԵԲՐՅԱԿՈՎ Կոնստանտին Բագրատի (1914–1996), ռուսագիր գրող, հրապարակախոս: ՌԽՖՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1975): 1953–58–ին՝ «*Կոմունիստ*» (ռուս., Երևան) թերթի պատ. քարտուղար, 1958–1996–ին աշխատել է «*Լիտերատուրնայա գազետա*»–ի խմբագրությունում: Հեղինակ է «Եվրոպայի քաղաքներով» (հայ.՝ 1959), «Շարժման իմաստությունը» (հայ.՝ 1977), «Կյանքի դասերը» (1977), «Ճանապարհներ և մարդիկ» (1982), «Մերձեցում անցյալին» (1988) ակնարկների, էսսեների, գր. դիմանկարների ժող–ների, նաև վավերագր. կինոսցենարների:

ՍԵՐԵԲՐՈՎ, Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (ծ. 1944), ռուս տիեզերագնաց օդաչու, գնդ.: ԽՄ հերոս (1982): Կատարել է 4 տիեզ. թռիչք (1982, 1983, 1989–90, 1993–94)՝ որպես բորտինժեներ և տիեզերագնաց–հետազոտող: Թռիչքի ընդհ. տևողությունը՝ 372 օր 22 *ժ* 53 *ր*: 10 անգամ դուրս է եկել բաց տիեզերք՝ 31 *ժ* 49 *ր* տևողությամբ:

ՍԵՐԵԲՐՈՎՍԿԻ Ալեքսանդր Սերգեևիչ (1892–1948), ռուս. կենսաբան, Ռուսաստանում գենետիկայի հիմնադիրներից: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1933) և ՀամԳԴԱ ակադ. (1935): Զևակերպել է և փորձարար. եղանակով հաստատել (աշխատակիցների հետ) գենի բաժանելիության վերաբերյալ գաղափարը: Առաջարկել է գենի գծային կառուցվածքի սխեմա և նրա չափերի որոշման եղանակ, նաև մնասատու միջատների դեմ պայքարի գենետիկ. մեթոդներ:

ՍԵՐԵԳԻՆԱ Անտոնինա Ալեքսանդրովնա (1929–2016), ռուս մարմնամարզուհի (բայդարկաներով թիավարություն): ԽՍՀՄ ս. վ. վ. (1960), վ. մ. (1972): Օլիմպ. խաղերի կրկնակի (1960, միայնակ և երկուսով), աշխարհի (1960), Եվրոպայի և ԽՍՀՄ բազմակի (1958–68) չեմպիոն:

ՍԵՐԵՄԵԲԱՆ (Seremban), ք. Մալայզիայում՝ Մալակկա թ–կղզում, Նեգրի Սեմբիլան նահանգ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 439 հզ. (2010): Տրանսպորտ. հանգույց է: Ս–ի մերձակայքում կա անագի հանքավայր:

ՍԵՐԵՆԱԴ (ֆրանս.՝ serenade, իտալ.՝ serenata, < sera – երեկո, գիշերային երգ), **ցայգերգ, գիշերերգ**, 1. նախապես՝ որևէ անձի պատվին նրա լուսամուտի տակ երեկոյան (կամ գիշերը) բացօթյա կատարվող վոկալ կամ գործիք. ստեղծագործություն: 2. Հիմնականում սիրային երգեր, որոնք առավելապես տարածված էին Իտալիայում և Իսպանիայում (*լյուտնյայի, կիթառի* կամ *մանդոլինի* նվագակցությամբ): 3. *Սյուիտի* կամ *դիվերտիմենտի* տիպի բազմամաս գործիք. ստեղծագործություն անսամբլի կամ փոքր նվագախմբի համար: 4. Հովվերգ. բնույթի *կանտատ*: 5. XIX դ–ում թե՛ վոկալ, թե՛ գործիք. Ս–ները դարձել են համերգ. ժանրի ստեղծագործություն (Ֆ. Շուբերտի Ս.՝ ձայնի համար, Լ. վան Բեթհովենի Ս–ները՝ գործիք. անսամբլների, Պ. Ի. Չայկովսկու Ս.՝ լար. նվագախմբի համար, ևն):

ՍԵՐԵՆԳԵՏԻ (Serengeti), ազգ. պարկ Տանզանիայի հս–ում: Տարածքը՝ 15 հզ. *կմ*²: Ստեղծվել է 1940–ին: 1959–ին Ս–ից առանձնացվել է Նգորոնգորո արգելոցը (տարածքը՝ 8,3 հզ. *կմ*²): Կան վայրի կճղակավորների (1,5 մլն և ավելի գլուխ) կուտակումներ (անտիլոպներ, վագերաձի, գոմեշներ, ռնգեղջյուրներ, գետաձիեր, ընձուղտներ), սողոր. փղեր, ընձառյուծներ, հովազներ, բորենիներ ևն: Ս–ում է Մ. Գրժիմեկի անվ. միջազգ. ԳՀԻ և լաբորատորիան:

ՍԵՐԵՆԿՅՈՒԼՅԱՆ Վարդգես, **Հովհաննես** (1871–1915), ազգ–ազատագր. շարժման գործիչ: ՀՀԴ կուս–յան անդամ: Եղել է Կարինի 1890–ի ցույցերի կազմակերպիչներից, որի համար ձերբակալվել է: Մասնակցել է «Բանկ Օտոմանի» միջադեպի (1896) նախապատրաստմանը: Գործել է Բուլղարիայում, Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում, Կարսում, 1901–ից՝ Վանում: Հրայրի հետ կազմել է ընդհանուր ապստամբության կանոնագիր: 1903–ին ձերբակալվել է և դատապարտվել 101 տարվա բանտարկության: 1908–ին ազատվել է բանտից և անցել Կարին, որտեղ և ընտրվել է օսմ. խորհրդարանի երեսփոխան: 1915–ին թուրքերը ձերբակալել և սպանել են Ս–ին:

ՍԵՐԵՐ, ժողղ Սենեգալի հվ–ում (1,1 մլն, 2010) և Հս. Գամբիայում (35 հզ.): Լեզուն՝ ատլանտ. լեզուների ընտանիքի հս–ատլանտ. ճյուղի սերեր: Գիրը արաբ. և լատ. գրաֆիկայի հիմքով է: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են, կան նաև ավանդ. հավատալիքների հետևորդներ և քրիստոնյաներ:

ՍԵՐԺԻՊԻ (Sergipe), նահգ Բրազիլիայի հս–արլ–ում՝ Ատլանտ. օվկ–ի ափին և Բրազիլ. սարահարթի լանջերին: Տարածքը՝ 22 հզ. *կմ*², բն.՝ 2,2 մլն (2014): Վարչ. կենտրոնը և գլխ. նվինգստո–ը՝ Արաքաժու:

ՍԵՐԻԱ (երկրբ.), շերտագր. ամենախոշոր ստորաբաժանումը. ընդգրկում է միասն. նստվածք., հրաբխ. կամ տեկտ. փուլերին բնորոշ լեռն. պարներ: Ստորաբաժանվում է շերտախմբերի:

ՍԵՐԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, արտադր–յան տիպ. բնորոշվում է պարբերաբար կրկնվող խմբաքանակներով պատրաստվող կամ նորոգվող իրերի սահմանափակ անվանացանկով և թողարկման համեմատաբար մեծ ծավալով: Միջանկյալ դիրք է գրավում անհատ. և զանգված. արտադր–յունների միջև:

ՍԵՐԻՄ–ՆԵՐ, **կարիամներ**, *կոունականանների* կարգի թռչունների ընտանիք: Բարձր.՝ մոտ 72 *սմ*: Գլխին ունի փուփուլ: Հայտնի է 2 տեսակ: Վազում են արագ, թռչում ծուլորեն: Սնվում են անողնաշարներով, պտուղներով: Հեշտությամբ ընտելանում են:

ՍԵՐԻՆ, ալֆա–ամինա–բետա–օքսիպրոպիոնաթթու՝ $CH_2(OH)CH(NH_2)COOH$, բնական ամինաթթու: Պարունակվում է պիտակուցներում և որոշ բարդ լիպիդներում: Կարևոր դեր է խաղում սպիտակուցներ ճեղքող ֆերմենտների կատալիտիկ ակտիվության դրսևորման մեջ (այսպես կոչված Ս–ային պրոտեազ):

ՍԵՐԻՆԵ (Ավագյան Սերինե Մովսեսի, 1896–1971), գրող, բանահավաք: 1920–ին հաստատվել է Երևանում: Հեղինակ է «Հազարան բլբուլ» (1944) պոեմի, «Իմ «երկրային» ուղին» (հրտ.՝ 1983) ինքնակենսագր. վեպի: Հավաքել է Արճակի ազգագրության և բանահյուսության նյութեր, որոնք «Արճակ» խորագրով տպագրվել են «Հայ ազգագրություն և բանահյուսություն» (պր. 8, 1978) մատենաշարում:

ՍԵՐԻՆՈՄՆԵՐ (Fringillidae), *ճնճղուկանմանների* կարգի թռչունների ընտանիք: Հայտնի է 122 տեսակ, ՀՀ–ում՝ 15 (ազնվասարեկ ամուրիկ, կանեփնուկ, խածկտիկներ, եղևնու խաչկտուց, կարմրակատար, ոսպնուկներ ևն): Հիմնականում անտառաբնակ կամ թփուտ., հատիկակեր կամ միջատակեր թռչուններ են: Մի շարք տեսակներ հայտնի են սրնգային ելևէջներ արձակող երգով:

ՍԵՐԻՑԻՆ (լատ.՝ sericum – մետաքս), սպիտակուց, որը *ֆիբրոինի* հետ կազմում է բնական մետաքսահումքի զանգվածը:

ՍԵՐԿԵՎԻԼԵՆԻ, վարդազգիների (վարդածաղիկներ) ընտանիքի բույսերի ցեղ: Հայտնի է 1 տեսակ՝ սովոր. Ս.: Պտուղներն օգտագործում են հրուշակեղենի, պահածոների արտադր–յան, գինեգործության,

բժշկության մեջ: ՀՀ–ում մշակում են Արաբատյան դաշտում, Տավուշի, Սյունիքի, Վայոց ձորի և այլ մարզերում: 1 ծառի բերքատվությունը՝ 40–100 *կգ*:

ՍԵՐՄ (բուսաբ.), սերմնավոր բույսերի վերարտադր–յան, տարածման, անբարենպաստ պայմաններում գոյատևման օրգան: Ունի սաղմ, կեղև (թաղանթ) և պաշար. սննդանյութերով հյուսվածքներ (էնդոսպերմ, պերիսպերմ), այդ հյուսվածքների բացակայության դեպքում (օր.՝ բակլազգիներում) պաշար. սննդանյութերը կուտակվում են սաղմի շաքիլներում: U–ի զանգվածը 0,002 *մգ*–ից (որոշ խոլորձների) մինչև 9 *կգ* է (որոշ արմավենիների): U. սննդ., տեխ. յուղերի, ներկերի, դեղանյութերի պատրաստման հումք է:

ՍԵՐՄԵՐԻ ԾԼՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, սահմանված ժամկետում սերմերի բնականոն ծիլեր կամ ընձյուղներ տալու հատկությունը: Որոշվում է ծիլերի կամ ընձյուղների և ցանած սերմերի թվի հարաբերությամբ (%–ով):

ՍԵՐՄՆԱԲՈՂԲՈՋ, **սերմնասկզբնակ**, սերմնավոր բույսերի գոյացություն, որից բեղմնավորումից հետո առաջանում է ***սերմը***: Ծածկասերմ բույսերի U. տեղադրված է ***սերմնարանի*** խոռոչում՝ կոնեռում՝ սերմնային թեփուկների մակերևույթին: U–ի կենտր. մասում (նուցելուսում կամ մեգասպորանգիումում) ձևավորվում են մեգասպորներ, դրսից U–ները սերմնակրին (պլացենտա) միացած են սերմնակոթի (ֆունիկուլուս) միջոցով:

ՍԵՐՄՆԱՓՈՉԻՉ, **սպերմատոզոիդ** (< հուն. sperma, սեռ. հոլ.՝ spermatos – սերմ, zoon – կենդանի էակ և eidos – տեսք), **սերմ**, մարդու, կենդանիների և շատ բույսերի արական սեռ. բջիջը: Առաջանում է առաջնային սեռ. բջիջներից՝ զարգացման հատուկ կենսընթացի ժամանակ: Պարունակում է քրոմոսոմների հապլոիդ հավաքակազմ: Օրգանիզմների մեծամասնության U–ներն ունեն գլխիկ, պարանոց և պոչիկ (մտրակիկ), որի շնորհիվ տեղաշարժվում են և բեղմնավորում անշարժ կամ պասսիվ ձվաբջիջը: Առանձնացնում են կենդանիների U–ների մի քանի տիպեր՝ մտրակավոր, ամեոբաձև, պայթող (հազվագյուտ): Բույսերի U. (անթերոզոիդ) առաջանում է ***անթերիդիումներում***:

ՍԵՐՄՆԱԲՈՒՅՍԵՐ (գոտ.), բույսեր, որոնք աճեցվում են սերմացու ստանալու համար, կամ միամյա մշակաբույսերի պտուղները, որոնք պահում են նույն նպատակի համար:

ՍԵՐՄՆԱԳԵՂԵՐ, տես *Ամրձիներ*:

ՍԵՐՄՆԱԺԱՅԹՔՈՒՄ, **էյակուլյացիա** (նոր լատ.՝ ejaculatio – ժայթքում), բարդ ռեֆլեքս. գործողություն, որն ապահովում է սեռ. հարաբերության ժամանակ տղամարդու սերմնահեղուկի արտազատումն առնանդամից: U–ման պահին արտադրվում է միջին հաշվով 2–6 *մլ* սերմնահեղուկ:

ՍԵՐՄՆԱԿԵՐՆԵՐ, խալցիդայինների վերնաընտանիքի որոշ թաղանթաթևավորների և երկարակնճիթների ընտանիքի բզեզների հավաք. անվանումը, որոնց թրթուրները զարգանում են սերմնավոր բույսերում: Խալցիդայինների վերնաընտանիքի U. են հաստոտիկների ընտանիքի (առվույտի, երեքնուկի, կորնգանի, նշենու ննի U.) և կալիմոնիդների ընտանիքի (իննձորենու U.) որոշ տեսակներ: Երկարակնճիթ U–ից են երկարակնճիթ ու շեկ տրիխուսները, երեքնուկի երկարակնճիթները և Apion ցեղի այլ տեսակները:

ՍԵՐՄՆԱՀԵՂՈՒԿ, **սպերմա** (հուն.՝sperma – սերմ), արական սեռ. գեղձերի արտազատուկների խառնուրդը. կազմված է սերմնաբջիջներից, ամորձու հավելումի (մակամորձի) հեղուկից և հավելյալ սեռ. գեղձերի արտազատուկից: U. սկսվում է արտադրվել ***սեռական հասունացման*** շրջանում, 40 տարեկանից հետո նրա արտադր–յունը նվազում է:

ՍԵՐՄՆԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐ, **սպերմատոֆիտներ**, սերմ առաջացնող բարձրակարգ բույսեր: Տարբերում են մերկասերմ (առավել հնագույն) և ծածկասերմ (ծաղկավոր) բույսեր: Կարևոր նշանակություն ունեն Երկրի բուսածածկույթի ստեղծման և մարդու տնտ. գործունեության համար:

ՍԵՐՄՆԱՎՈՐՈՒՄ, կենդանիների սեռ. բջիջների (ձվաբջիջ և սերմնաբջիջ) հանդիպումն ապահովող շարժընթաց, որը նախորդում է բեղմնավորմանը: Ձկների, նաև գաղտ. կենդանիների բուծման համար օգտագործում են արհեստ. U.:

ՍԵՐՄՆԱՐԱՆ (բուսաբ.), վարսանդի ստորին լայնացած, սնամեջ մասը. ներառում է մեկ կամ մի քանի սերմնաբողբոջներ, որոնցից բեղմնավորումից հետո ձևավորվում են սերմերը: U. փոխակերպվում է ***պտղի***:

ՍԵՐՄՆԱՔԱՂ (Corvus frugilegus), ***ագռավների*** ընտանիքի թռչուն: Նստակյաց է, տարածված: Մարմնի երկ.՝ 41–46, թևերի բացվածքը՝ 81–99 *սմ*, կ. զ.՝ 422–454 *գ*: Աղմկարար թռչուն է: Ապրում է լ–տափաստաններում, ցանքադաշտերում, պտղատու այգիներում, քաղաքամերձ պուրակներում: Օգտակար է. ոչնչացնում է բնահողում (հատկապես՝ կարտոֆիլի դաշտերում) բազմացող վնասատու անողնաշարներին, սակայն վաղ գարնանը կարող է վնասել հացահատիկի ցանքերը:

ՍԵՐՈՓՅԱՆ Երվանդ Գրիգորի (1923–1985), ռումինահայ ալերգաբան: Ալերգաբանության ռում. դպրոցի հիմնադիրը: Բժշկ. գիտ. դ–ր (1972): Աշխ–ները վերաբերում են սրտաբանության, ալերգաբանության, ասթմայաբանության խնդիրներին: Հեղինակ է «Ալերգիաների դեմ օգտագործվող դեղորայքի մասին» (1962), «Ընչառական և մարսողական ալերգիաներ» (1972), «Ալերգիական հիվանդություններ» (1977) և այլ մենագրությունների, համահեղ.՝ «Ներքին բժշկության տրակտատի» (հ. 1–7): Ասթմայաբանության միջազգ. ընկ–յան փոխնախագահ, Ռումինիայի ալերգաբանների ընկ–յան նախագահ:

ՍԵՐՈՓՅԱՆ Խաչատուր (Տեր–Սերոբյան Քրիստափոր, 1825–1874), քիմիկոս: Յեյլի համալսարանում ուսանել է քիմիա, բժշկություն և աստվածաբանություն: 1850–ական թթ–ին ԱՄՆ–ում ստեղծել է դոլարի կանաչ և սև ներկերը (ամերիկ. կառ–յան շքանշան), որոնց գործածությամբ կանխվել են թղթադրամների կեղծումները: 1860–ին վերադարձել է Կ. Պոլիս, եղել արքունի բժիշկ, պաշտոնավարել օսմ. դրամահատարանում: Օսմ. կայսրության «Մեջիդիե» շքանշան:

ՍԵՐՈՓՅԱՆ Քերոբ Պետրոսի (1924–1945), գվարդիայի եֆրեյտոր, սակրավոր: Փառքի երեք աստիճանների շքանշանակիր [1944, 1945 (2)]: ՀՄՊ–ի ժամանակ կռվել է 89–րդ հայկ. (Թամանյան) հրաձգ. դիվիզիայի կազմում (1942–ից): Շքանշանների արժանացել է Ղրիմի ազատագրման ժամանակ, Օդերի ափին հենակետ նվաճելիս և Բեռլինի մատույցներում մղված մարտերում ցուցաբերած խիզախության համար: Զոհվել է Բեռլինի Հումբոլդ–Հայն ամրոցը պայթեցնելիս:

ՍԵՐՈԿԻ ՍՄԲԱՎԱՆԴ, Հայկ. հրաբխ. բարձրավանդակի կենտր. մասում՝ Բյուրակն բարձրավանդակից հվ–արմ.՝ Արածանիի Գյոնիկ, Բյուրակն վտակների վերնագավառում: Բարձր.՝ 2000–2200 *մ*: Բուսածածկույթը մարգագետնատափաստանային է:

ՍԵՐՈՎ Անատոլի Կոնստանտինովիչ (1910–1939), խորհրդ. օդաչու: ԽՄ հերոս (1938), բրիգադի հրամ. (1939): Մասնակցել է Իսպանիայի 1937–38–ի քաղաքաց. պատերազմին. եղել է սավառնակախմբի ղեկ., խփել 8 ինքնաթիռ: Զոհվել է ավիավթարից:

ՍԵՐՈՎ Վալենտին Ալեքսանդրովիչ (1865–1911), ռուս. գեղանկարիչ, գրաֆիկ: Պերեդվիժնիկ: Մարտիրոս ***Սարյանի*** ուսուցիչներից: Վաղ շրջանի գործերին («Դեղձով աղջիկը», 1887, «Արևով լուսավորված աղջիկը», 1888) բնորոշ են կենս. թարմությունը, պլեներ. հարուստ գուներանգը, դիմանկարներին՝ արտահայտչականությունն ու լակոնիզմը («Մ. Ն. Երմոլովա», 1905, «Վ. Օ. Գիրշման», 1910–11), բնանկարներին («Հոկտեմբեր», 1895)՝ խաղաղ տրամադրությունը, պատմ. կոմպոզիցիաներին («Պետրոս I», 1907)՝ էներգիան, կերպարի ստեղծագործ. ոգին: Որոշ գործեր մոտ են մոդեռն ոճին («Իդա Ռուբինշտեյն», «Եվրոպայի առևանգումը», երկուսն էլ՝ 1910): Գծանկարի վարպետ էր («Կոիլովի առակները», 1895–1911): U–ի Պ. Դ. Անտիպովայի (1890), Մ. Ն. Ակիմովայի (1908) դիմանկարները, «Խոտի դեզը» (1901), «Մեծ արծվի գավաթը» (1910) գունանկարները և գրաֆիկ. մի շարք գործեր ՀԱՊ–ում են:

ՍԵՐՈՎՔԵՆԵՐ, հրեշտակներ քրիստոնեության և հուդայականության մեջ, որոնք առավել մոտ են Աստծուն և փառաբանում են նրան: ***Եսայի*** մարգարեի գրքում U. ներկայացվում են որպես երեք զույգ թևերով էակներ: «Սրիոպագիտիկաների» համաձայն՝ U. երկն. աստիճանակարգության բարձրագույն աստիճանն են:

ՍԵՐՊԵՆՏԱՐԻՈՒՄ (լատ.՝ serpens, սեռ. հոլ.՝ serpentis – օձ), շինություն՝ օձեր պահելու և նրանցից թույն ստանալու համար: ***Տիրարիումի*** տարատեսակ է:

ՍԵՐՊԵՆՏԻՆ, շերտավոր սիլիկատների ենթադասի միներալ՝ $Mg_3[Si_2O_5](OH)_4$: Դեղնականաչ թանաքաբյուրեղ. զանգված է: Կարծր.՝ 2,5–3,5, խտ.՝ 2,5–2,6 $գ/սմ^3$: Տարբերակները՝ օֆիտ, անտիգորիտ (մանրաթելիկավոր, թերթավոր), քրիզոտիլ (նրբաթելավոր), լիզարդիտ (նրբահատիկավոր):

ՍԵՐՊՈՒԽՈՎ, ք. ՌԴ Մոսկվայի մարզում, նվինգստ Օկա գետի ափին՝ Նարա գետի հետ միախառնման տեղում: Երկթղ. կայարան է: Բն.՝ 123,4 (2009): 1–ին անգամ հիշատակվել է 1336–ին: Պահպանվել են XVI–XIX դդ–ի ճարտ. հուշարձաններ: Մերձակայքում է Մերձօկյան դարավանդ. արգելոցը:

ՍԵՐՎԱՆՏԵՍ Սաավեդրա (Cervantes Saavedra) Միգել դե (1554–1616), իսպանացի գրող: Հեղինակ է «Գալաթեա» (1585) հովվերգ. վեպի, «Խրատական նովելներ»

(1613, հայ.՝ 2005), «Նոր ութ կատակերգություն և ութ ինտերմեդիա» (1615) ժող-ների, «Նումանսիայի առումը» (հրտ.՝ 1784) չափածո պատմ. ողբերգության, «Բարքերն Ալժիրում» (հրտ.՝ 1784) դրամայի, «Պերսիլեսի և Սիգիզմունդի ճանապարհորդությունը» (հրտ.՝ 1617) սիրային-արկած. վեպի: Ս-ին համաշխ. հռչակ է բերել «Հանճարամիտ ասպետ Դոն Կիխոտ Լամանչացին» (հ. 1, 2, 1605, 1615, հայ.՝ 1878) վեպը, որտեղ զուգորդվում են ռեալիզմը, ռոմանտիզմն ու հերոսականությունը: Գլխ. հերոսները՝ Դոն Կիխոտն ու Սանչո Պանսան, հակոտնյա կերպարներ են, որոնց միջոցով ներկայացվում են ռոմանտիկան և իրապաշտությունը, հոգևորն ու նյութ. շահախնդրությունը, անփարատելի թախիծն ու անհոգ կենսասիրությունը: Վեպը մեծ ազդեցություն է թողել համաշխ. գրկ-յան, գեղագիտ. և փիլ. մտքի վրա:

«ՍԵՐՎԵՅՈՐ» («Surveyor»), ամերիկ. տիեզ. թռիչք. սարքերի սերիա՝ Լուսնի վրա փափուկ վայրէջքի և հետազոտությունների համար, ինչպես նաև դրանց մշակման ծրագիրը: «Ս.»-ի զանգվածը Երկրի վրա մոտ 1 *տ* է, Լուսնի վրա վայրէջքից հետո՝ մոտ 285 *կգ*: 1966–68-ին արձակվել է 7 «Ս.»:

ՍԵՐՎԵՏ (Servet) Միգել (1509/11–1553), իսպանացի բժիշկ: Կարծիք է հայտնել արյան փոքր շրջանառության գոյության մասին և կանխատեսել նրա ֆիզիոլոգ. նշանակությունը: Քրիստ. դավանաբանությունը քննադատելու համար հետապնդվել է: Ժ. *Կալվինի* հրամանով մեղադրվել է հերետիկոսության մեջ և այրվել:

ՍԵՐՎԻՏՈՒՏ (լատ.՝ servitus – ստրկություն, ենթակայություն), հռոմ., ինչպես նաև ժամանակակից մի շարք երկրների իրավունքում ուրիշի գույքից օգտվելու իրավունքի (օր.՝ հարևանի հողամասով անցնելու)՝ սահմանափակում օրենքով: ՀՀ կարգավորում է Քաղօրենսգրքով:

ՍԵՐՏ, Սերտ ի Լոպես (Sert i López), Խոսեպ Լյուիս (Խոսե Լուիս, 1902–1983), իսպանացի (կատալոնացի) ճարտ., քաղաքաշինարար: Հեղինակ է Իսպանիայի տաղավարի՝ Փարիզի համաշխ. ցուցահանդեսում (1937), Բարսելոնի (1933–35), Մեղելինի (1949–51), Բոգոտայի (1951–53, համահեղ.), Հավանայի (1956) գլխ. նախագծերի, նաև բնակելի թաղամասերի (Քեմբրիջում, 1963–65, ևն):

ՍԵՐՏՈՐԻՈՍ (Sertorius) Քվինտոս (մ. թ. ա. մոտ 122–72), հռոմեացի զորավար, 83–81-ին՝ Իսպանիայի պրետոր: Մ. թ. ա. 80-ից գլխավորել է իբեր. ցեղերի հակահռոմ. ապստամբությունը: Միավորելով գրեթե ողջ Իսպանիան՝ քանիցս պարտության է մատնել (76, 75) հռոմեացիներին: Սպանվել է մերձավորների դավադրությամբ:

ՍԵՐՈՒՆԴ, գեներացիա (կենսբ.), 1. մեկ օրգանիզմի ձևերը, որոնք հերթափոխվում են նրա կենս. փուլի ընթացքում (տես *Սերունդների հաջորդականություն*): 2. Առանձնյակների խումբ՝ ընդհ., նախնիներից միատեսակ հեռավոր ազգակցությամբ: Օր.՝ մարդու համար ծնողներ, երեխաներ, թոռներ՝ 3 հաջորդ. Ս.: Հոր և որդու, մոր և դստեր ծննդյան միջև եղած ժամանակամիջոցը կոչվում է Ս-ի տևողություն (մոտ 30 տարի):

ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, օրգանիզմների բազմացման եղանակով տարբերվող սերունդների օրինաչափ հերթափոխությունը: Կենդ. աշխարհում տարբերում են առաջնային և երկրորդային Ս. հ.: Առաջնայինը սեռ. սերնդի հերթափոխությունն է՝ ոչ սեռ. բջիջներով բազմացող սերունդով (հատուկ է բազմաթիվ նախակենդանիների): Երկրորդայինը լինում է 2 ձևով՝ սեռ. բազմացման տարբեր ձևերի հերթափոխությամբ, օր.՝ բնականոն սեռ. գործընթացը՝ կուսածնությամբ (հետերոգոնիա), և սեռ. բազմացման հերթագայումը՝ անսեռ բազմացմամբ՝ բազմաբջիջ վեգետատիվ մարմինների կամ լայնակի կիսման միջոցով (մերագենեզ):

Բուսական աշխարհում Ս. հ. զարգացման ցիկլերում դիպլոիդ և հապլոիդ փուլերի հերթագայումն է:

ՍԵՐՊԻՒՁՔ, 10–35 % յուղայնությամբ կաթնամթերք: Ստանում են կաթի սերզատումով: 35 % յուղայնության Ս-ի էներգ. արժեքը՝ 1,4 ՄՋ (334,5 *կկալ*): Թթվասերի և յուղի արտադր-յան հումք է:

ՍԵՐՖԻՆԳ (անգլ.՝ surfing – սահել մակերևույթով), ջր. մարզաձև. մարզիկը կանգնում է ոտքերին չամրացված խցանե կամ փրփրապլաստե տախտակին (զանգվածը՝ 10–12,5 *կգ*, երկ.՝ 2,5–2,8 *մ*) և շարժվում է մակընթաց. ալիքների վրայով: Տարածված է Ավստրալիայում, Նոր Զելանդիայում, ԱՄՆ-ում: Առագաստով մրցարշավները կոչվում են վինդսերֆինգ:

ՍԵՌԻ, Կորեայի Հանրապետության մայրաքաղաքը՝ Հանգա գետի ափին՝ Դեղին ծովի Կանիվաման ծոցից արլ.: Ինքնուրույն վտմ է, կենտր. ենթակայության քաղաք: Բն.՝ 9,6 մլն (2010): Ինչհոնի հետ կազմավորում է Ասիայի խոշորագույն ագլոմերացիան՝ 22,7 մլն բն.: Երկրի խոշոր տրանսպորտ. հանգույցն է: Ծով. նվինգստ-ն է: Ինչհոնը: Ունի օդանավակայան, մետրո: Գլխ. տնտ., գիտ. և մշակութ., էլեկտրոն. արդ-յան բարձրտեխնոլոգ. սարքավորումների առաջատար կենտրոնն է: Զարգացած են ավտո- և նավաշինությունը, նավթավերամշակումը, քիմ. և նավթաքիմ., դեղագործ., պոլիգրաֆ, թեթև, սննդի և այլ արդ-յան ճյուղեր: Միջազգ. առևտրի և ֆինանսական գործունեության կենտրոն է: Ս-ում են ազգ. բանկերի և ընկ-ների գլխադաս. գրասենյակները, միջազգ. կորպորացիաների և ֆին. հաստատությունների մասնաճյուղեր: Ս-ում է Կորեայի (ֆոնդ.) 2 բորսաներից 1-ը, ԳՀՓԿԱ կենտրոններ, բուհերը ևն: Ճարտ. հուշարձաններից են՝ Պոպչխոնսա տաճարի Իյոնմյոտհապ եռահարկ պագոդան (1085), Կյոնբոկկուն պալատ. վիթխարի համալիրը (1394, ավերվել է 1592-ին, վերականգնվել XIX դ-ում, այժմ՝ Ազգ. թանգարան), Չհանդոկ (XV–XVII դդ.), Դոկսու (XVI դ., այժմ՝ Ժամանակակից արվ-ի ազգ. թանգարան), Չանգյոն (XV–XVII դդ.): Միջնադար. տիրակալների պալատները Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում են: Հիմնադրվել է մ. թ. ա. 18-ին, բազմաթիվ անգամ փոխել է անվանումները: Լի հարստության ժամանակ (1392–1910)՝ Կորեայի մայրաքաղաքը (1394-ից): Կորեան Ճապոնիայի բռնանվաճումից հետո եղել է ճապոն. գեն-նահանգապետերի նստավայրը (1910–45-ին): Ս-ում են անցկացվել XXIV օլիմպ. խաղերը (1988):

ՍԵՎԻՏԱ, ք-նվինգստ Սարոկկոյի Միջերկր. ծովի ափերին (Իսպանիայի ուղղակի կառավարման ենթակա է): Բն.՝ 78,3 հզ. (2010): Որպես արտաքին առևտր. և միջնորդ. գործառույթների նվինգստ՝ ունի ազատ առևտրի ռեժիմ: Հիմնադրել են փյունիկեցիները մ. թ. ա. XVII դ-ում:

«ՍԵՒԱՆ», հաս-քաղ., գր. եռօրյա թերթ (1933–36, Աթենք): Խմբ-ներ՝ Առաքել Ժամկոչյան, Մանուկ Դարբինյան:

«ՍԵՒԱՆ», ազգ., գր., մշակութ. ամսագիր (1950–58, Բուխարեստ՝ հայ., ռում.): Խմբ-ներ՝ Վ. Խաթանեսյան, Տիգրան Տեր-Գրիգորյան:

«ՍԵՒԱՆ», ազգ., գր-հաս. շաբաթաթերթ (1960–90, Բուենոս Այրեսում՝ հայ. և իսպ., 1960–61-ին՝ «Հայ կեանք»): Արգենտինահայ մշակութ. միության հրտ-յուն: Խմբ-ներ՝ Գրիգոր Կեոնճյան, Սիմոն Սրապիոնյան, Սիմեոն Յուղուրթճյան, Ատրիան Լոմյոմճյան, Կառլոս Չոլաքյան:

ՍԵՓԱԿԱՆ ԶԱՆԳՎԱԾ, մարմնի զանգվածը՝ հաշվարկման սեփ. համակարգում: Կոչվում է նաև հանգստի զանգված:

ՍԵՓԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱ, մարմնի (մասնիկի), տվյալ մարմնի՝ հաշվարկման սեփ. համակարգում չափված էներգիան. նույնն է, ինչ *հանգստի էներգիան*:

ՍԵՓԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ հարաբերականության տեսության մեջ, սեփ. հաշվարկ. համակարգում գտնվող ժամացույցով չափվող ժամանակը, երբ ժամացույցը տվյալ հաշվարկման համակարգի նկատմամբ անշարժ է, բայց շարժվում է նրա հետ միասին: Համակարգից դուրս գտնվող դիտորդի համար համակարգում ընթացող որևէ շարժընթացի տևողությունը կախված է դիտորդի և շարժընթացի հարաբեր. արագությունից, ընդ որում՝ Ս. ժ. այդ բոլոր արժեքների նվազագույնն է:

ՍԵՓԱԿԱՆ ՀԱԾՎԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ մարմնի (մասնիկի), տվյալ մարմնի հետ անշարժ կապված հաշվարկման համակարգ, որտեղ մասնիկը հանգստի վիճակում է: Մարմինը կարող է շարժվել արագացմամբ (նաև պտտվել) այլ մարմինների նկատմամբ, որոնց հետ կարող է կապված լինել հաշվարկման իներցիալ համակարգը, այդ պատճառով ընդհ. դեպքում Ս. հ. հ. իներցիալ չէ: Այդպիսին է, օր., չկայունացված ԵԱՀ-ի Ս. հ. հ.՝ նրա հետ անշարժ կապված կոորդինատ. համակարգը և արբանյակին ամրացված ժամանակը չափող ժամացույցը:

ՍԵՓԱԿԱՆ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐ, ազատ տատանումներ, սկզբն. ուժի ազդեցությամբ առաջացած տատանումներ տատանող. համակարգում, որոնք շարունակում են ընթանալ առանց արտաքին ազդեցությունների: Մեխ. Ս. տ-ի ձևն ու հաճախականությունը որոշվում են համակարգի զանգվածով և առաձգականությամբ, իսկ էլեկտրամագնիս. Ս. տ.՝ ինդուկտիվությամբ և ունակությամբ: Իրական համակարգերում Ս. տ. մարում են էներգիայի անխուսափելի կորուստների հետևանքով:

ՍԵՓԱԿԱՆԱՇՇՈՒՐՀՈՒՄ, պետ. կամ տեղ. ինքնակառավարման գույքի (հողամասերի, արդ. ձեռն-ների, բանկերի և այլ հիմնարկների, տրանսպորտի, կապի, ԶԼՄ-ների, շենքերի, բաժնետոմսերի, մշակութ. արժեքների ևն) վճարով կամ անվճար հանձնումը մասնավորին: Ս. կարող է լինել գաղտնի, երբ պետ. գույքը երկար ժամանակով վարձակալության է հանձնվում մասնավոր անձանց կամ ընկ-ներին, մասնակի, երբ վաճառվում է, օր., բաժնետոմսերի միայն որոշ մասը,

իրականացվել ապազգայնացման ձևով, երբ նախկինում ազգայնացված գույքը հանձնվում է նախկին կամ այլ սեփականատերերի:

ՍԵՓԵԹՃՅԱՆ Արամ Արմենակի (ծ. 1934), գրող, խմբ.: 1994–2007-ին՝ *«Խօսնակ»* պարբ-ի խմբ., 1992-ից՝ Բեյրութի «Սիփան» հրտչ-յան տնօրեն: Հեղինակ է «Անլոյս գիշերներ» (1964), «Կեանքի կարօտով» (1969) պատմվածքների ժող-ների, «Ողջակէզ» (1978), «Ես սեւ եմ... բայց գեղեցիկ» (1985), «Հող եւ մորմոք» (2001) վիպակների, «Ժամանակայոյզ խոհեր» (2005), «Բանաստեղծութիւնը տագնապի ընդմէջէն» (2009) հոդվածների ժող-ների: ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» շքանշան (2010):

ՍԵՔՍ (ֆրանս.՝ sexe, լատ.՝ sexus – սեռ), սեռ. սեքսուալություն, հոգեկան հակազդեցությունների, ապրումների և արարքների ամբողջություն՝ ուղղված ***սեռական հաճույան*** դրսևորմանն ու բավարարմանը:

ՍԵՔՍՈԼՈԳԻԱ (< լատ. sexus – սեռ և հուն.՝ logos – ուսմունք), **սեռաբանություն**, սեռ. կյանքի գիտ. հետազոտությունների և գիտելիքների բնագավառ, որն ընդգրկում է նրա կենսաբանաբժշկ., սոցիալ–պատմ. և հոգեբ. տեսանկյունները: Որպես ինքնուրույն բնագավառ՝ Ս. ձևավորվել է 1940-ական թթ-ին:

ՍԵՔՍՈՊԱԹՈԼՈԳԻԱ, կլինիկ. բժշկագիտ-յան բնագավառ. ուսումնասիրում է մարդու սեքսուալ առողջության հիվանդագին շեղումները, նրանց ծագումը, մշակում ախտորոշման, բուժման և կանխարգելման մեթոդներ: Ձևավորվել է XX դ-ի 2-րդ կեսին: 1977-ին Երևանի 3-րդ կլինիկ. հիվանդանոցի հիմքի վրա կազմավորվել է բժշկասեքսոլոգ. ծառայություն, իսկ 1980-ին՝ Ընտանիքի, ամուսնության և սեքսոպաթոլոգիայի հանրապետ. կենտրոն:

ՍԵՔՍՏԱՆՏ (լատ.՝ sextans – վեցերորդ), ծովագնացության մեջ՝ սեքստան, աստղագիտ. անկյունաչափ գործիք. կիրառվում է ծովագնացության և ավիացիոն աստղագիտ-յան մեջ՝ հորիզոնի նկատմամբ լուսատուների (օր.՝ Արեգակի) անկյուն. բարձր-յունը չափելու համար: Ս-ի միավորը (լիմբ) շրջանագծի 1/6-ն է (այստեղից՝ անվանումը): Ս-ի գաղափարը տվել է Ի. *Նյուտոնը* (1699), առաջինը կառուցել է Ջ. Հեդլին (1730/31):

ՍԵՔՍՏՈՍ ԷՄՊԻՐԻԿ (Sextus Empiricus, II դ-ի վերջ – III դ-ի սկիզբ), հինհուն. փիլ. և գիտնական: Հավաքագրել և համակարգել է հինհուն. սկեպտիկների արտահայտությունները՝ Պիհոնոնից մինչև Էնեսիդեմոս: Ս. տրամաբ-յան առաջին պատմաբաններից է:

ՍԵՔՎՈՅԱ (Sequoia), **մամոնտածառ**, ճահճանոճազգիների ընտանիքի ասեղնատերև ծառերի ցեղ: Ս-ի միակ տեսակը մշտադալար է, բարձր.՝ 100 *մ*, տրամագիծը՝ 6–11 *մ*: Բնական ծառատունկեր կան միայն ԱՄՆ Կալիֆոռնիա և Օրեգոն նահագ-ներում: Աճեցնում են թեթև ու ամուր փայտանյութ ստանալու համար (օգտագործում են ստորջրյա կառույցների նպատակով), նաև որպես գեղազարդիչ:

ՍԵՔՎՈՅԱԴԵՆԴՐՈՆ, ճահճանոճազգիների ընտանիքի աստղատերև ծառերի ցեղ: Միակ տեսակը հսկա Ս. է: Բարձր.՝ 100 *մ*, տրամագիծը՝ մինչև 10 *մ*: Ապրում է 3–4 հզ. տարի: Ս-ի առանձին թավուտներ կան Կալիֆոռնիայում (Սիեռա-Նևադա լ-շղթայի արմ. լանջերին) արգելոցներ են: Աճեցվում է զբոսայգիներում՝ որպես գեղազարդիչ:

ՍԵՔՈՒԼՅԱՆ Օգոստինոս (Լադիսլավ Զաքարիայի, 1921–2014), բնագրագետ, տոմարագետ, դրամագետ, խմբ.: ՎննՄՄ անդամ (1938-ից), վրդ. (1944-ից): 1972–78-ին՝ Բեյրութի, 1992–2009-ին՝ Լոս Անջելեսի Մխիթարյան վարժարանների տնօրեն: 1980–83 և 1988–92-ին՝ *«Հանդէս ամսօրեայ»* պարբ-ի խմբ.: Հեղինակ է «Վիեննայի Մխիթարեան թանգարանի Կոստանդին Գ–Լևոն Ե. դրամները» (1971), «Դրամագիտական պրպտումներ. Հեթում Բ, Լևոն Գ եւ Աւշին» (1982) և այլ աշխ-ների: Կազմել է «Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա» (1983) և ««Հանդէս ամսօրեայի» յոդուածներուն 100 տարուան մատենագիտական ցուցակ. 1887–1986» (1990) ձեռագրացուցակները:

ՍԵՖ Ռոման Սեմյոնովիչ (Ռոալդ Սեմյոն, 1931–2009), ռուս գրող: Հեղինակ է «Արտասովոր հետիոտնը» (1965), «Կապույտ երկնաքար» (1969), «Գետային տրամվայ» (1971), «Հեքիաթի բանալին» (1984) մանկ., «Անհեթեթ ստեր» (1999) քնար. բանաստեղծությունների ժող-ի, նաև պատմվածքների, պիեսների: Անհիմն բռնադատվել է (1951–56), հետագայում՝ արդարացվել: Հայ. հրատարակվել են «Ֆեդյունյա Լյովկինը Սանկտ Պետերբուրգում» (1967) վիպակը, «Եթե դու չես հավատում» (1975) բանաստեղծությունների ժող-ը: ՌԽՖՍՀ Պետ. մրց. (1991):

ՍԵՖԱՐԴՆԵՐ, հրեաների ենթաէթնիկ. խումբ, ժառանգները Պիրենեյան թ-կղզուց գաղթածների են: 1492-ին Իսպանիայից վտարումից հետո բնակվել են Օսմ. կայսրության սահմաններում (Բալկաններում և Արլ. Միջերկրածովքում), Իտալիայում և Հս. Աֆրիկայում: Լեզուն՝ սեֆարդերեն:

ՍԵՖԵՂԻՆՅԱՆՆԵՐ, հայ իշխան. տոհմ *Վասպուրական*նինգ-ում XII–XVI դդ-ում: Հիմնադիրն է *Արծրունիների* շառավիղ և մեծահարուստ Սեֆեդին Ա Արքայունը: Ս-ի իշխանությունը տարածվել է Աղթամար կղզու և նրա հանդիպակաց ափի գյուղերի վրա: 1272–1580-ական թթ-ին Ս. իրենց ձեռքում են պահել *Աղթամարի կաթողիկոսությունը*. աթոռակալել են Ս-ից սերած *Զաքարիա Գ*, Ստեփանոս Դ Տղան (1465–89): XVI դ-ի վերջից Ս. աստիճանաբար անհետացել են քաղ. ասպարեզից:

ՍԵՖԵՐԻՍ (Սեֆերիադիս) Գեորգոս (1900–1971), հույն բանաստեղծ: Հեղինակ է «Շրջադարձ» (1931), «Ցիստեռն» (1932), «Գիրք փորձառության» (1940), «Հերթափոխի օրագիրը» (հ. 1–3, 1940–55) քնար. բանաստեղծությունների ժող-ների: Նոբելյան մրց. (1963):

ՍԵՖԵՐՅԱՆ Սոնա Սարգսի (1940–2017), լեզվաբան, թարգմանչուհի, հրտ.: Բանասիր. գիտ. դ-ր (2003), պրոֆ. (2006): 1988-ից՝ *«Ապրիլ»* տարեգրքի հիմնադիր-խմբ., 1990-ից՝ «Սահակ Պարթև» հրտչ-յան հիմնադիր-տնօրեն: Հեղինակ է «Շեքսպիրը հայ իրականության մեջ (1850–1950)» (2002), «Համառոտ ակնարկ թարգմանության» (համահեղ., 2012) աշխ-ների: Կազմել է «Իմաստախոս Շեքսպիրը» (1986, 2010) շեքսպիրյան իմաստախոսությունների անգլ-հայ. ժող-ը, «Իմաստախոս ժողովուրդը» (2005) ասացվածքների անգլ-հայ., հայ-անգլ. և «Անգլերեն-հայերեն–հայերեն-անգլերեն» (2013) բառարանները: Թարգմանել է Լ. Քերոլի, Ռ. Քիփլինգի, Ք. Մենսֆիլդի, Ֆ. Ս. Ֆիցջերալդի գործերից:

ՍԵՖՅԱՆՆԵՐ, **Սեֆևիներ**, արքայատոհմ Իրանում՝ 1502–1736-ին: Հիմնադրել է շիա մահմեդականների Սեֆևիյե աղանդի առաջնորդ Սաֆի (Սեֆի) էդ-Դինն Իսահակ Արդաբիլիի սերնդից Իսմայիլը՝ պետ. կրոն հռչակելով *շիականությունը*: Ս-ի տիրապետության տակ էին Իրանը, Ատրպատականը, Արլ. Վրաստանը, Աֆղանստանի մեծ մասը, Արլ. Հայաստանը, մասամբ՝ Իրաքը: Որոշակի քաղ. և զինվ. իշխանությամբ էին օժտված Սյունիքում և Արցախում իշխող հայ մելիքները: Ս-ի երևելի ներկայացուցիչներից էին *Իսմայիլ I*-ը (1502–24), Թահմասպ I-ը (1524–76), Աբբաս I-ը (1587–1629):

ՍԱՉԻ (Crataegus), **ալոճենի**, վարդազգիների ընտանիքի տերևաթափ թփերի և ծառերի ցեղ: Հայտնի է մոտ 100 (այլ տվյալներով՝ մինչև 900) տեսակ, ՀՀ-ում՝ մոտ 10 (արլ., կովկաս., կեռասնակավոր, Մերձրի ևն)՝ տարածված Կոտայքի, Տավուշի, Սյունիքի և այլ մարզերում: Ծաղիկների հասուն պտուղների պատրաստուկներն օգտագործում են սրտի ֆունկցիոնալ հիվանդությունների, սրտային անբավարարության, շողացող անոիթմության և այլ դեպքերում, պտուղները՝ թարմ և վերամշակված: Որոշ տեսակներ գեղազարդիչ են: Մեղրատու է: Ս. պոնտականը (հանդիպում է «Խոսրովի անտառ» արգելոցում, Ուրցաձորում) գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

«ՍԷՐ», մանկավարժ., քաղ. հանդես (1860–64, Կ. Պոլիս): Խմբ-ներ՝ Անտոն Ճևահիրճյան, Պողոս Պառնասյան:

ՍԹԱԼ (Staël) Աննա Լուիզ Ժերմեն դը (1766–1817), ֆրանսիացի գրող, գրկ-յան տեսաբան, հրապարակախոս: Ս-ի «Հասարակական կանոնադրումների առնչությամբ քննարկվող գրականության մասին» (1800) գրքի նորարար. դատողություններն սկզբնավորել են գրկ-ների պատմամշակութ. և համեմատ. ուսումնասիրությունը: Հեղինակ է «Դելֆին» (1802), «Կորին կամ Իտալիա» (1807) վեպերի, նաև «Գերմանիայի մասին» (1810) աշխ-յան (հրտ.՝ 1813, Մեծ Բրիտանիա, գիրքը բռնագրավել է Նապոլեոնը), «Տասնամյա տարագրություն» (հրտ.՝ 1821, անավարտ) հուշագրության:

ՍԹԱՅՆ (Stein) Գերտրուդ (1874–1946), ամերիկացի հրեա գրող, գրկ-յան տեսաբան: «Կորուսյալ սերունդ» եզրույթի օգտագործումը վերագրում են Ս-ին: Հեղինակ է «գիտակցության հոսք» գր. ուղղությանը բնորոշ տարրերով հարուստ «Ամերիկացիների կազմավորումը» (1908, հրտ.՝ 1925) վեպի, «Ալիսա Բ. Թոքլասի ինքնակենսագրությունը» (1933) գրքի:

ՍԹԱՅՆ (Սթեյն) Ուիլյամ Հաուարդ (1911–1980), ամերիկացի կենսաքիմիկոս: Աշխ-ները վերաբերում են սպիտակուցների քիմիային: Ս. *Մուրի* հետ բացահայտել է ոիբոնուկլեազ ֆերմենտի առաջնային կառուցվածքը, սպիտակուցների վերլուծության համար կիրառել իոնափոխանակ. քրոմատագրությունը, ստեղծել ամինաթթվային վերլուծիչ սարք: Նոբելյան մրց. (1972, Ս. Մուրի հետ):

ՍԹԱՅՆԲԵՐԳԵՐ (Steinberger) Ջեկ (ծ. 1921), ամերիկացի ֆիզիկոս: Ապացուցել է *նեյտրինոների* 2 տեսակի՝ նեյտրինոյի և հականեյտրինոյի գոյությունը: Նոբել-

յան մրց. (1988, Լ. Մ. *Լեդերմանի* և Մ. *Շվարցի* հետ):

ՍԹԱՅՆԲԵՔ (Steinbeck) Ջոն Էռնստ (1902–1968), ամերիկացի գրող: Հեղինակ է «Ոսկե գավաթը» (1929), «Մոլորված ավտոբուսը» (1947), «Եդեմից դեպի արևելք» (1952), մարդկային առաքելությունների արժեզրկումը պատկերող «Մեր հոգսերի ձմեռը» (1961, հայ.՝ 1978) վեպերի, նաև «Մկների և մարդկանց մասին» (1937, հայ.՝ 1978) վիպակի, «Մարգարիտը» (1945, հայ.՝ 1961) պատմվածքի, «Ճամփորդություն Չառլիի հետ՝ Ամերիկան փնտրելիս» (1962) ակնարկների ժող–ի: Ս–ի ստեղծագործության գլուխգործոցը «Յասման ողկույզներ» (1939, հայ.՝ 2017) մեծակտավ վեպն է, որտեղ պատկերել է տնից և իր հողակտորից քշված մի ընտանիքի ճակատագիրը: Հայ. հրատարակվել է նաև «Արջ–Ջոննիի ականջները» (1964) գիրքը: Նոբելյան մրց. (1962):

ՍԹԱՅՆՄԱՆ (Steinman), **Շտեյնման**, Ռալֆ Մարվին (1943–2011), ամերիկացի իմունաբան և բջջաբան (ծագումով՝ կանադացի): Հայտնագործել է (Բ. *Բոթլերի* և Ժ. *Հոֆմանի* հետ) դենդրիտային բջիջները և հետազոտել դրանց նշանակությունը ձեռքբերովի իմունիտետի համար: Առաջինն է նկարագրել «դենդրիտային բջիջները» և ներդրել այդ եզրույթը: ԱՄՆ ԳԱԱ անդամ (2001):

Նոբելյան մրց. (2011, Բ. Բոթլերի և Ժ. Հոֆմանի հետ, հետմահու):

ՍԹԱՅՐՈՆ (Styron) Ուիլյամ (1925–2006), ամերիկացի գրող: Հեղինակ է բանակային կյանքի թեմայով «Երկարատև երթ» (1952) վիպակի, «Նատա Թյորների խոստովանությունը» (1967) գեղ–փիլ. պատմավեպի, «Եվ հրկիզեց այդ տունը» (1960) էկզիստենցիալիստ., «Սոֆին ընտրություն է կատարում» (1979, կինոնկար՝ 1982) ինքնակենսագր., «Տեսանելի խավար» (1990), «Մարտիկի ճանապարհը» (2001) և այլ վեպերի:

ՍԹԱՐԼԻՆԳ (Starling) Էռնեստ Հենրի (1866–1927), անգլիացի ֆիզիոլոգ: Հետազոտությունները վերաբերում են արյան շրջանառությանը, ավշագոյացմանը, աղիների շարժողությանը, ենթաստամոքս. գեղձի հյութազատությանը ևն: Ներմուծել է «հորմոն» հասկացությունը (1905):

ՍԹԱՖՈՐԴ (Stafford) Թոմաս (ծ. 1930), ամերիկացի աստղագնաց: ՌԾՈՒ գնելեյտ.: Թռել է «Ջեմինի–6 Ա» (1965), «Ջեմինի–9 Ա» (1966), «Ապոլոն–10» (1969) և «Սոյուզ–Ապոլոն» (1975) տիեզերանավերով: Թռիչքի ընդհ. տևողությունը՝ 21 օր 3 *ժ* 42 *ր*: «Ապոլոն–10»–ով հասել է լուսնամերձ ուղեծիր:

ՍԹԵԻՆ (Stein) Մարկ Աուրել (1862–1943), անգլիացի աշխարհագետ, ինագետ (ծագումով՝ հրեա): Իրականացրել է արշավախմբեր և պեղումներ Չինաստանում, Մոնղոլիայում, Հս. Հնդկաստանում, Աֆղանստանում և այլուր: Թողել է մանրամասն հաշվետվություններ և հարուստ հավաքածու, այդ թվում՝ արվ–ի ձեռագիր ստեղծագործություններ (պահպանվում են Մեծ Բրիտանիայի և Հնդկաստանի հավաքածուներում):

ՍԹԵՅՑ (Steitz) Թոմաս (ծ. 1940), ամերիկացի մոլ. կենսաբան, բյուրեղագետ: Աշխ–ները վերաբերում են ռիբոսոմների տարած. կառուցվածքին, հակաբիոտիկների հետ նրանց փոխազդեցությանը: Հաստատել է Ռիբոսոմի 50–s– ենթամիավորում նուկլեոտիդային մնացորդներից կազմված ակտիվ կենտրոնի առկայությունը, որոնք պատասխանատու են սպիտակուցների սինթեզման ժամանակ պեպտիդային կապերի առաջացման համար: Նոբելյան մրց. (2009, Վ. *Ռամակրիշնանի* և Ա. Յոնատի հետ):

ՍԹԵՆԼԻ (Stanley) Հենրի Մորթոն (1841–1904), անգլիացի լրագրող: Աֆրիկայի հետազոտողներից: 1871–72–ին, որպես «Նյու Յորք Հերալդ» թերթի թղթ., մասնակցել է Դ. *Լիվինգսթոնի* որոնումներին և նրա հետ ուսումնասիրել է Տանգանիկա լիճը: Երկու անգամ կտրել–անցել է Աֆրիկան:

ՍԹԵՆԼԻ Ուենդել Մերեդիտ (1904–1971), ամերիկացի վիրուսաբան, կենսաքիմիկոս: Աշխ–ները վերաբերում են վիրուսների քիմիային, վերարտադրմանը և փոփոխականությանը: Առաջինն է բյուրեղների ձևով առանձնացրել ծխախոտի խայտաբղետության վիրուսը (1935): Նոբելյան մրց. (1946, Ջ. *Նորթրոպի* հետ):

ՍԹԵՆՖՈՐԴԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ԱՄՆ–ի բուհերից, հիմնադրվել է 1885–ին (բացվել է 1891–ին) Կալիֆոռնիայի Նինգ–ի Սթենֆորդ ք–ում: 2015–ին ուներ ավելի քան 14 հզ. ուսանող:

ՍԹԵՌՆ (Sterne) Լորենս (1713–1768), անգլիացի գրող: Հեղինակ է գր. և փիլ. չափազանցություններով հարուստ «Ջենտլմեն Տրիստրամ Շանդիի կյանքն ու կարծիքները» (h. 1–9, 1760–67), «Սենտիմենտալ ճանապարհորդություն Ֆրանսիայում և Իտալիայում» (1768, անավարտ) վեպ–պարոդիաների: Ս–ի գր. պարոդիաներ ստեղծելու վարպետությունը, գր. ձևերի փորձարարությունը, հոգեբ. վերլուծությունները գաղ. և գեղ. մեծ ազդեցություն են թողել հետագա գրողների վրա (Է. Հոֆման, Լ. Ն. Տոլստոյ, Ջ. Ջոյս):

ՍԹԵՖԵՆՍՈՆ, Ստիվենսոն (Stephenson), Ջորջ (1781–1848), անգլիացի գյուտարար, շոգեշարժիչով երկթող. տրանսպորտի հիմնադիրը: 1814–ից կառուցել է շոգեքարշներ, ստեղծել գործնականորեն պիտանի 1–ին նմուշները («Ռակետա», 1829, ևն): Կառուցել է առաջին հաս. օգտագործման երկթող–ին (Դառլինգտոն–Սթոքտոն, Անգլիա) 1825–ին:

ՍԹԻԳԼԵՐ (Stigler) Ջորջ (1911–1991), ամերիկացի տնտեսագետ: Աշխ–ները վերաբերում են գների տեսության, զբաղվածության, արդ–յան կազմակերպման, տնտ–յան պետ. կարգավորման խնդիրներին: Նոբելյան մրց. (1982):

ՍԹԻԳԼԻՑ (Stiglitz) Ջոզեֆ (ծ. 1943), ամերիկացի տնտեսագետ: Աշխ–ները վերաբերում են միկրո– և մակրոէկոնոմիկայի, ապրանք. շուկաներում հավասարակշռության, աշխատավարձի ու կառուցվածք. գործազրկության, անհավասարության չափման և պետ. հատվածի էկոնոմիկայի խնդիրներին, անհամաչափ տեղեկատվությամբ շուկաների հետազոտությանը: Նոբելյան մրց. (2001, Ջ. *Ակերոֆի* և Մ. *Սփենսի* հետ):

ՍԹԻԼ (Stil) Անդրե (1921–2004), ֆրանսիացի գրող: 1950–59–ին՝ «Յումանիտե» (ֆրանս.) թերթի գլխ. խմբ.: Հեղինակ է «Առաջին հարվածը» (1951–53, հայ.՝ 1955) եռերգության, «Փլուզում» (1960), «Երազսիրավեպ» (1976), «Աստվածը մանուկ է» (1979), «Գազել» (1991) վեպերի, նաև «Սեր բառի մասին» (1992) բանաստեղծությունների ժող–ի, նաև էսսեների, մանկ. երկերի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1952):

ՍԹԻՒԼԻՆԳ Ջեյմս Հաթչիսոն (1820–1909), անգլիացի փիլ., նորհեգելականության հիմնադիրներից: Թարգմանել և մեկնաբանել է Ի. Կանտի «Զուտ բանականության քննադատություն» և Գ. Հեգելի «Տրամաբանության գիտությունը» աշխ–ները:

ՍԹԻՎԵՆՍ (Stevens) Ուոլլես (1879–1955), ամերիկացի բանաստեղծ: Հեղինակ է «Ներդաշնակություն» (1923), «Գաղափարների հաջորդականություն» (1935), «Երկնագույն կիթառով մարդը» (1937), «Աշնանային արշալույսներ» (1950) ժող–ների, «Գրառումներ մտացածին վեհ ձևերի առիթով» (1942) պոեմ–աշխ–յան, որտեղ ներկայացրել է ստեղծագործության բանաստեղծ. փիլ–յունն ու երևակայությունը, նաև պոեզիայի մասին էսսեի:

ՍԹԻՎԵՆՍՈՆ Ռոբերտ Լուիս (1850–1894), շոտլանդացի գրող: Արկածային գրկ–յան վարպետ: Հեղինակ է համաշխ. ճանաչում բերած «Գանձերի կղզին» (1883, հայ.՝ 1937), նաև «Առևանգվածը» (1886), «Բալանտրեի տերը» (1889), «Նավաբեկյալները» (1892), «Քաթրիոնա» (1893, հայ.՝ 1970) և այլ վեպերի, «Օստո իշխանը» (1885), «Սև նետը» (1888, հայ.՝ 1959) պատմավեպերի, «Դոկտոր Ջեքիլի և պարոն Հայդի տարօրինակ պատմությունը» (1886) փիլ–հոգեբ. վիպակի, նաև պատմվածքների, բանաստեղծությունների:

ՍԹԻՓԼ–ՉԵՅՋ (անգլ.՝ steeple–chase), 1. ձիարշավ. սպորտ՝ 4000–7000 *մ* երկ–յամբ, բարդ արգելքներով (մինչև 30): 2. Աթլետիկայում՝ 3000 *մ*–անոց արգելավազք (արգելքներից մեկը՝ ջրափոսից առաջ):

ՍԹՅՈՐՋԵՆ (Sturgon) Ուիլյամ (1783–1850), անգլիացի գյուտարար–էլեկտրատեխնիկ: 1825–ին հայտնագործել է *էլեկտրամագնիսը*:

ՍԹՈՈՒՆ (Stone) Իրվինգ (1903–1989), ամերիկացի գրող: Հեղինակ է Վ. վան Գոգի («Կյանքի ծարավը», 1934, հայ.՝ 1970), Ջ. Լոնդոնի («Նավաստին թամբի վրա», 1938, հայ.՝ 1963), Միքելանջելոյի («Տառապանքներ և ուրախություններ», 1961), Չ. Դարվինի («Ծագում», 1980) մասին կենսագր. վեպերի, որոնք առանձնանում են պատմ. և հոգեբ. հավաստիությամբ, նաև կենսագր. ժանրին վերաբերող աշխ–յան (1965): Հայ. հրատարակվել է «Միքելանջելո» (1978) վեպը:

ՍԹՈՈՒՆ Ռիչարդ (1913–1991), անգլիացի տնտեսագետ: Աշխ–ները վերաբերում են տնտեսաչափության, տնտ. աճի մոդելավորման, ազգ. հաշիվների ու ժողովրդագր. հաշվառման համակարգերի մշակման խնդիրներին: Նոբելյան մրց. (1984):

ՍԹՈՈՒՆՀԵՆՋ (անգլ.՝ Stonehenge), մեգալիթ. կառույց Մեծ Բրիտանիայում՝ Լոնդոնից շուրջ 130 *կմ* հվ–արմ.՝ Սոլսբերի ք–ի մոտ՝ Էյվոն գետի ձախ ափին: Բաղկացած է 30 կոպտատաշ հսկա քարե սյուներից ու սալերից: Անվանումը միանշանակ բացատրություն չունի: Տարածված ավանդույթի համաձայն՝ Ս–ում ծիս. արարողություններ են կատարել ատլանտները, հայտնի կախարդ Մեռլինը: Ֆիզիկոս Պարիս *Հերոնին* որոշ աղերսներ է տեսել *Ջորաց քարերի* ու Ս–ի միջև և այն կարծիքին էր, որ «Ս.» անվանումը համապատասխանում է հայ. «Քարահունջ» անվանը: Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է (1986):

ՍԹՈՓԱՐԴ (Stoppard) Թոմ (Թոմաշ Սթրաուսլեր, ծ. 1937), հրեա անգլիագիր

գրող: 1946-ից՝ Մեծ Բրիտանիայում: Հեղինակ է «Ռոզենկրանցն ու Գիլդենսթեռնը մահացած են» (1966, Վ. Շեքսպիրի «Համլետ» ողբերգության թեմայով) պոստմոդեռնիստ., երգիծ. «Արկադիա» (1993), «Երազանքի ափը» (2002) պիեսների, «Լորդ Մալքվիստն ու միստր Մունը» (1966) արսուրդ վեպի, նաև կինոսցենարների:

ՍԹՐԵՅԶԱՆԴ (Streisand) Բարբրա (ծ. 1942), ամերիկացի կինոդերասանուհի, երգչուհի, կինոռեժ.: Նկարահանվել է «Ծիծաղելի աղջիկը», «Հելլո, Դոլլի», «Ծիծաղելի լեդին» մյուզիքլներում, «Բուն և կատվիկը», «Ծանոթություն Ֆակերամի հետ» կատակերգ., «Այդպիսին էինք մենք» դրամատիկ. ֆիլմերում: Նկարահանել է «Յենտլ» (1983), «Մակընթացությունների տիրակալը» (1991), «Հայելու երկու կողմը» (1996) ֆիլմերը: Հեղինակ է երգերի և կինոերաժշտության: «Օսկար» մրց. (1968, 1976):

ՍԹՐԵՍ, գերհույզ (անգլ.՝ stress – լարվածություն), լարված վիճակ, որը մարդու և կենդանիների մոտ առաջանում է ուժեղ ներգործությունների հետևանքով:

ՍԹՐՈՍՈՆ (Strawson) Փիթեր (1919–2006), անգլիացի փիլ.: Մեծ արձագանք է ստացել Ի. Կանտի «Զուտ բանականության քննադատություն» աշխ-յան Ս-ի ինքնատիպ մեկնաբանությունը («Իմաստի սահմանները», 1966):

ՍԻ, եվրոպ.նոտագրության մեջ երաժշտ. 7 հնչյուններից, հիմն. դիատոնիկ դո մաժոր գամմայի հնչյունաշարի VII աստիճանը: Նշվում է լատ. H տառով:

ՍԻ ԷՆ ԷՆ (CNN – The Cable News Network), ամերիկ. մալուխ. լրատվ. հեռուստաընկ.: Հիմնադրել է Թ. Թըրները 1980-ին: Կենտր. գրասենյակը՝ Ատլանտա ք-ում: Հեռարձակման լեզուն՝ անգլ.: Լուրերը տարածվում են 38 տիեզ. արբանյակների միջոցով, հասանելի են ավելի քան 200 երկրում: ՀՀ-ում CNN International ալիքը հեռարձակվում է Երևանում և մերձակա մարզերում: Դիտողների թվով աշխարհում երկրորդն է՝ *Բի Բի Սի*-ից հետո:

ՍԻԱԲԱՆԴՈՎ, Սամանդ Ալի (1909–1998), քուրդ փոխգնդ.: ԽՄ հերոս (1945): Հերոսի կոչման արժանացել է Բելառուսի ազատագրման ժամանակ Նարևի ափին (Լեհաստան) հենակետի պաշտպ-յան մարտերում (1944-ի աշնանը) ցուցաբերած խիզախության համար: 1952-ից՝ ՀԽՍՀ գյուղնախարարի տեղակալ: Հեղինակ է «Սիաբանդ և Խաջե» (1962, հայ.), «Երջանիկ ճակատագիր» (1969, քրդ.) պոեմների: Ա. Չաչանի հետ կազմել է «Հայ-քրդերեն բառարան» (1957):

Լենինի, ԽՍՀՄ Կարմիր դրոշի, ՀՄՊ 1-ին և 2-րդ աստիճանների, Կարմիր աստղի, «Պատվո նշան» (2) շքանշաններ:

ՍԻԱԼԿՈՏ, ք. Պակիստանի Փենջաբ պրովինցիայում: Բն.՝ 511 հզ. (2010):

ՍԻԱՄԱՆԳՆԵՐ, ածակցամատ գիբոններ, գիբոնների ընտանիքի կապիկների սեռ: Սարմնի երկ.՝ մինչև 60 *սմ*: Կզակի տակ ունեն կոկորդապարկ, որը ծառայում է ձայնի ուժեղացմանը: Հայտնի է 1 տեսակ՝ Սումատրա կղզում և Մալակկա թ-կղզում: Երբեմն ընդգրկում են գիբոնների սեռում:

ՍԻԱՄԱՆԹՈ (Յարճանյան Ատոմ Հովհաննեսի, 1878–1915), բանաստեղծ: Հեղինակ է հայ երիտասարդությանն ուղղված «Դիւցազնօրէն» (1902) ժող-ի, «Հայորդիներ» (1905) բանաստեղծությունների 3 շարքերի, «Հոգեվարքի եւ յոյսի ջահեր» (1907) բանաստեղծությունների, պոեմների ժող-ի («Զարչարանքի երազ», «Հոգեվարքի իրիկուն», «Մահուան տեսիլ», «Անդրշիրիմեան աղաղակ»), հայ ժողդ-ի ողբերգ. ճակատագիրը պատկերող «Կարմիր լուրեր բարեկամէս» (1909) բանաստեղծությունների շարքի, «Հայրենի հրաւեր» (1909) չափածո նամակաշարի, «Ամբողջական գործը (հ. 1, 1910) պոեմների ժող-ի: «Կամքի իրիկուններ» ծրագրված շարքում («Խօսքեր անծանօթ անցորդին», «Թող զօրութիւնը ձեզ խօսի» ևն), «Սուրբ Մեսրոպ» (1913) պոեմում փառաբանել է հայոց անցյալը: Մեծ եղեռնի զոհ:

ՍԻԱՄԻ ԾՈՑ, Հվ-չին. ծովում՝ Մալակկա և Հնդկաչին թ-կղզիների միջև: Երկ.՝ 720 *կմ*, լայն. մուտքի մոտ՝ շուրջ 400 *կմ*, խոր.՝ մինչև 70 *մ*: Ափին է Բանգկոկ նվինգստ-ը (Մեծ Նամ Չաո-Պրայայի գետաբերանի մոտ):

«ՍԻԱՄՅԱՆ ԵՐԿՎՈՐՅԱԿՆԵՐ», Չանգ և Էնգ (1811–1874), Սիամում (Թաիլանդ) կրծոսկրի շրջանում սերտաճումով ծնված չին երեխաներ: Իրենց ցուցադրել են Եվրոպայում և Ամերիկայում: 1829-ից ապրել են ԱՄՆ-ում: Ամուսնացած են եղել, ունեցել են սերունդներ: Տես նաև *Քահֆոպագներ*:

ՍԻԱՄՅԱՆ ԿԱՏՈՒ, կարճամազ կատուների ցեղ: Ստացվել է Թաիլանդում (Սիամում, այստեղից՝ անվանումը): Ճկուն կենդանի է՝ երկար, բարակ մարմնով և սեպաձև գլխով: Մորթին առանց ենթամորթու է: Գույները բազ են, դունչը, ականջները, ոտքերը, պոչը՝ ավելի վառ գունավորմամբ:

ՍԻԱՆ (մինչև XIV դ.՝ Չանյան), ք. Չինաստանում՝ Հուանհե գետի Վեյհե վտակի հովտում, Շենսի պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 4,59 մլն, ագլոմերացիայում՝ մոտ 5,3 մլն (2010): Ավտո-, ինքնաթիռաշինության (այդ թվում՝ ռազմ.), հրթիռատիեզ., էլեկտրոն. (հեռուստահաղորդակցության սարքավորումներ ևն) արդ-յան ճյուղերի խոշոր կենտրոն է, արտադրում է երկթող. շարժակազմ: Թողարկում է համակարգչ. և այլ ծրագր. արտադրանք: Գործում է Շենսիի թանգարանը: Հնագույն քաղաքներից է. մ. թ. ա. III դ-ի վերջ–մ. թ. ա. I դ-ի սկզբին՝ Արմ. Հան կայսրության մայրաքաղաքը, III–VI դդ-ում՝ հս-չին. մի շարք պետությունների գլխ. քաղաքը: 583–923-ին՝ Չինաստանի մայրաքաղաքը: Ս-ում և շրջակայքում պահպանվել են ճարտ. հուշարձաններ, այդ թվում՝ Դայանտա (652, վերակառուցվել է 704-ին) և Սյաոյանտա (707) բուդդայական պագոդաները:

ՍԻԱՉԵՆ, դենդրիտ. տիպի սառցադաշտ, ամենամեծը՝ Կարակորումում: Երկ.՝ 75 *կմ*, տարածքը՝ 1180 *կմ*^{2}:

ՍԻԲԱՅԻ Յուսուֆ (1917–1978), եգիպտացի արաբ գրող, հաս. գործիչ: Հեղինակ է «Ուրվականներ» (1947) պատմվածքների ժող-ի, «Ազրայիլի փոխանորդը» (1947), «Երկերեսանի երկիրը» (1949) երգիծ., «Մենք մենակ չենք» (1969), «Կյանքն ակնթարթ է» (1973) վեպերի, «Ժամանակից առավել ուժեղ» (1966) պիեսի, «Ապտակներ և համբույրներ» (1959) հոդվածների ժող-ի:

ՍԻԲԵԼԻՈՒՍ (Sibelius) Յան (1865–1957), ֆինն կոմպոզիտոր: Ֆինն. կոմպոզիտոր. դպրոցի առաջատարը: Հեղինակ է սիմֆոնիաների (1899–1924), ծրագր. նվագախմբային երկերի, այդ թվում՝ «Լեմինկյայնեն» (1893–96, 4 լեգենդ), «Ֆինլանդիա» (1899), «Հյուսիսի դուստրը» (1906), «Տապիոլա» (1926) և այլ սիմֆ. պոեմների, ջութակի և նվագախմբի կոնցերտի (1903), ռոմանսների, երգերի և այլ գործերի:

ՍԻԲԵԽ (Falcaria), **ավեղ, սագի տոտիկ**, նեխուրազգիների ընտանիքի երկամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 4 տեսակ, ՀՀ-ում՝ 2՝ սովոր.՝ գրեթե բոլոր մարզերում, և սիբեխանման (միայն Արարատ ք-ի շրջակայքում և Մեծամոր գետի ափերին, գրանցված է ՀՀ Կարմիր գրքում): Մատղաշ տերևներն ու ընձյուղները օգտագործում են սննդի մեջ (թարմ, թթու դրած):

ՍԻԲԻԼԼԱՆԵՐ, առասպել. գուշակուհիներ (հատկապես՝ ապագա կործանարար աղետների): Հույն և հռոմեացի հեղինակները 1-ին Ս. են համարում Դարդանոս Տրովացու դստերը, որի անունով կոչվել են հետագա բոլոր ժամանակների գուշակուհիները: Առավել հայտնի է եղել Կյումե ք-ի սիբիլլան, որին են վերագրում «Սիբիլլաների գրքերը» գուշակությունների ժող-ը, որը Հին Հռոմում ծառայել է պաշտոն. գուշակությունների համար:

ՍԻԲԻՐ, ՌԴ ասիական տարածքի մեծ մասի՝ հս–ում՝ Ուրալից մինչև Խաղաղ օվկ-ի ջրբաժան լ-շղթաները, և Հս. սառուցյալ օվկ-ի ափերից մինչև Ղազախստանի բլրավոր տափաստանները, Մոնղոլիայի և Չինաստանի սահմանները: Տարածքը՝ մոտ 10 մլն *կմ*^{2}: Առանձնանում են Արմ. Ս. և Արլ. Ս., որոնց սահմաններում են Արևմտասիբիր. հարթավայրը, Միջին-սիբիր. սարահարթը, Հվ. Ս-ի լ-ները (Ալթայ, Արմ. Սայան, Արլ. Սայան, Տուվայի, Մերձբայկալ, Անդրբայկալ), հս–արլ–ում՝ Ս-ի լ-շղթաների համակարգը, որոնք եզրավորվում են Վերխոյանսկի լ-շղթայով և Կոլիմայի նախալեռներով: Կլիման մեծ մասում ցրտաշունչ և խիստ ցամաքային է: Հունվ. միջին ջերմաստիճանը՝ –16°C, Արևմտասիբիր. հարթավայրում՝ –48°C (Արլ. Յակուտիայում է Հս. կիսագնդի ցրտի բևեռը՝ –68°C՝ Վերխոյանսկում, Օյմյակոնում): Ս-ի գետերի մեծ մասը պատկանում է Հս. սառուցյալ օվկ-ի ծով. ավազանին: Խոշոր լճերն են Բայկալը, Թայմիրը: Կան բազմաթիվ արգելոցներ, ազգ. պարկեր: Հարուստ է օգտ. հանածոներով (ածուխ, նավթ, բնական գազ, երկաթահանք, ալմաստ, ոսկի, բազմամետաղներ, գրաֆիտ ևն):

Մ. թ. I հզ-ամյակի 2-րդ կեսին Ս-ի հվ. շրջանները մտել են Թյուրք., Ույղուր. և Ղրղըզ. խաքանությունների, Բոհայ և այլ պետությունների, XIII դ-ում Ս-ի մի մասը՝ Մոնղ. կայսրության, ապա՝ Սիբիր. խանության կազմերի մեջ: Ռուս. վոյեվոդների (XV դ-ի վերջ) և Երմակի (1582–85) արշավանքներն սկզբնավորել են Ս-ի միացումը Ռուս. պետությանը: Ս-ի յուրացումն սկսել են աշխարհախույզները, նրանց են պատկանում մի շարք աշխարհագր. հայտնագործություններ. կարևոր են Օխոտի ծով դուրս գալը (1639–41) և Բերինգի նեղուցի անցումը (1648, Ս. Ի. Դեժնև, Ֆ. Ա. Պոպով): XIX դ-ի 50-ական թթ-ին Ռուս. կայսրության կազմի մեջ են մտել Ստորին Պրիամուրիեն, Ուսուրական երկրամասը և Սախալինը, որով էլ պայմաններ են ստեղծվել Հեռավոր Արևելքի յուրացման համար: 1891–1916-ին իրականացվել է Անդրսիբիր. երկթող. մայ-

րուղու կառուցումը՝ կապելով Հեռավոր Արևելքը և Ս. Եվրոպ. Ռուսաստանին: Քաղաքաց. պատերազմի և 1917–22-ի զավթաներխուժման ժամանակ Ս-ում կազմավորվել է Հեռավորար. Հանրապետությունը (1920–22), որը հետագայում ներառվել է ՌԽՖՍՀ կազմի մեջ:

ՍԻԲԻՐԱԿԱՆ ՊԼԱՏՖՈՐՄ, մինչքեմբր. պլատֆորմ՝ հիմնականում Ենիսեյ, Լենա գետերի և Բայկալ լճի միջև: Ծածկոցը կազմված է վերին քեմբրիից-անթրոպոգենի հասակի նստվածքներից, որոնցից լայնորեն տարածված են ոիֆեյի, քեմբրիի և օրդովիկի բեկոր., կարբոնատ. և աղաբեր նստվածքները: Ս. պ-ի սահմաններում են Տունգուսկայի կարբոնի և պերմի, Իրկուտսկի յուրայի ածխաբեր ավազանները: Տունգուսկայի սինեկլիզի ծայրամասերում կան հիմք. հրային ապարներ՝ տրապներ:

ՍԻԲԻՐԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆ, պետություն (XV դ-ի 2-րդ կես–XVII դ-ի սկզբներ) Արմ. Սիբիրում: Մայրաքաղաքը՝ Չինգի-Տուրա (այժմ՝ Տյումեն), XV դ-ի վերջերից՝ Իսկեր (Կաշլիկ, Սիբիր): Վերելք է ապրել Կուչում խանի (1568–82) ինքնուրույն կառավարման սկզբին: *Երմակ Տիմոֆեևիչի* արշավանքով (1582–85) սկսվել է Ս. խ-յան նվաճումը, դադարել է գոյություն ունենալուց 1608-ին՝ ռուս. զորքի՝ Ալի խանին (Կուչումի որդուն) գերեվարելուց հետո:

ՍԻԲԻՐՅԱԿՈՎ Ալեքսանդր Միխայլովիչ (1849–1933), ոսկու ռուս արդյունաբերող, մեկենաս, Սիբիրի հետազոտող: 1880 ու 1884-ին իրականացրել է Պեչորայի գետաբերանի մոտ արշավը (այսպես կոչված Սիբիրյակովյան մեծուղի): Աջակցել է Տոմսկի համալսարանի ստեղծմանը: Ս-ի պատվին անվանվել են «Սիբիրյակով» սառցահատ և կղզիներ:

«ՍԻԲԻՐՅԱԿՈՎ» («Ալեքսանդր Սիբիրյակով»), Ռուսաստանի նավատորմիդի սառցահատ շոգենավ: Կառուցվել է 1909-ին: Ձրատարողությունը՝ 3200 *տ*: 1932-ին 1-ին անգամ 1 նավարկության ընթացքում «Ս.» անցել է *Հյուսիսային ծովային ուղին* (արշավախմբի ղեկ.՝ Օ. Յ. Շմիդտ, նավապետ՝ Վ. Ի. Վորոնին): 1942-ի օգոստ. 25-ին Կարայի ծովում գերմ. «Ադմիրալ Շեր» ծանր հածանավի դեմ մարտում ջրասույզ է եղել:

ՍԻԲԻՐՅԱԿՈՎԻ ԿՂԶԻՆԵՐ, Կուզկինի կղզիներ, բլրաշատ կղզիներ Կարայի ծովի հվ. մասում: ՌԴ տարածք: Տարածքը՝ 800 *կմ*^{2}, բարձր.՝ մինչև 50 *մ*: Հոկտ–ից հուլիս սառցակալած է: Անվանակոչել է Ն. Ա. Է. *Նորդենշելդը* 1878-ին՝ Ա. Մ. *Սիբիրյակովի* պատվին, որը ֆինանսավորել է նրա արշավախմբի աշխ-ները:

ՍԻԲԻՐՅԱՆ ԼԵՌՆԱՅԻՆ ԱՅԾ, այծերի սեռի երկկճղակավոր կենդանի: Մարմնի երկ.՝ 1,6 *մ*, կ. զ.՝ 100 *կգ*: Եղջյուրները թրաձև են, առջևի մասում ունեն խոշոր ելուններ: Արժեքավոր որսարդյունագործ. կենդանի է (օգտագործում են միսը և մորթին): Գլխաքանակը նվազել է. կարիք ունի պահպանության:

ՍԻԲԻՐՅԱՆ ԽՈԶ, սիբիրախտ, կենդանիների և մարդու սուր վարակիչ հիվանդություն: Հարուցիչը Ս. խ-ի բացիլն է: Ախտանշանները՝ սեպտիցեմիա (արյան վարակման ձև), աղիների (աղիք. ձև), մաշկի (կարբունկուլոզ ձև), թոքերի ախտահարումներ: Մարդը վարակվում է հիվանդ կենդանիներից, դիակների հերձման ժամանակ, մսեղիքը կտրատելիս, ջրի, հողի, անասնապահ. մթերքի միջոցով, կենդանիները՝ հաճախ արոտավայրում:

ՍԻԲԻՐՅԱՆ ԿԱՏՈՒ, կիսաերկարամազ կատուների ցեղ: Խոշոր, ուժեղ, մկանուտ կենդանի է՝ խիտ, չթրջվող մորթիով և փափուկիլպոչով: Գլուխը մեծ է, ականջներին կարող է ունենալ վրձնիկներ:

ՍԻԲԻՐՅԱՆ ՄԱՅՐԻ, կեղծ *մայրի*, սոճու ցեղի ծառատեսակներ:

ՍԻԲԻՐՅԱՆ ՄԵՏԱՔՍԱԳՈՐԾ, *բոժոժախուների* ընտանիքի թիթեռ: Ասեղնատերևազգի բնափայտ. ցեղերի մնասատու Սիբիրում, Հեռավոր Արևելքում: Թևերը գորշ են: Մսվում է (թրթուրները) ասեղնատերևով, բողբոջներով և մատղաշ կոներով:

ՍԻԲԻՐՅԱՆ ՌԱՄԱ, մտնում է մեծ մոնղոլոիդ ռասայի մեջ: Բնորոշ են մյուս մոնղոլոիդներից ավելի բաց և փափուկ մազերը: Տարածված է Սիբիրում՝ Ենիսեյից արլ. (հս. էվենկներ, լամուտներ, բուրյաթների և յակուտների որոշ խմբեր):

ՍԻԲԻՐՑԵՎ Նիկոլայ Միխայլովիչ (1860–1900), ռուս հողագետ: Համակարգել և ստեղծագործաբար զարգացրել է Վ. Վ. Դոկուչաևի և Պ. Ա. Կոստիչևի ուսմունքը: Աշակել է հողերի գենետիկ. դասակարգումը:

ՍԻԲԻՈՒ, ք. Ռումինիայի կենտր. մասում, համանուն ժուդեցի վարչ. կենտրոնը: Բն.՝ 152 հզ. (2010): Արդ. կենտրոն է: Պահպանվել են XIII–XIX դդ-ի ճարտ. հուշարձանները, քարե ամրությունների մնացորդներ, գոթ. եկեղեցին (XIII–XVI դդ.), Բրուկենթալի պալատը (XVIII դ., այժմ՝ թանգարան):

ՍԻԲՈ (ինքնանվանումը՝ սիբե, սիբո մանչ-ժու), ժողդ Չինաստանի հս-արմ-ում (հիմնականում՝ Սինցզյան-Ույղուր. ինքնավար շրջանում): Թվաքանակը՝ 188,8 հզ. (2000): Լեզուն՝ մանչ. լեզվի բարբառը: Մանջուրցիների ժառանգներն են, Սինցզյանում վերաբնակվել են XVIII դ-ում:

ՍԻԲՈՐԳ (Seaborg) Գլենն Թեոդոր (1912–1999), ամերիկացի քիմիկոս և ֆիզիկոս: ՌԳԱ արտ. անդամ (1971): ԱՄՆ-ի ատոմ. էներգիայի հանձնաժողովի նախագահը (1961–71): Բացահայտել է (ուր. հետ) անդրուրան. տարրերը՝ պլուտոնիում (1941), ամերիցիում, կյուրիում (1944) ևն: Նորելյան մրց. (1951, Է. Մ. *Մաքմիլանի* հետ):

ՍԻԳ (Coregonus lavaretus), *սիգաձկների* ընտանիքի ձուկ: Սևանա լիճ է ներմուծվել 1924–27-ին Լադոգա և Չուդ (Ռուսաստան) լճերից: Երբեմն համարում են որպես առանձին ենթատեսակ՝ Սևանի Ս. (Coregonus lavaretus sevanicus): Մարմնի երկ.՝ 30–40 (երբեմն՝ մինչև 60) *սմ* (կողքերից մի փոքր սեղմված է), կ. զ.՝ մինչև 3,5 *կգ*, գլուխը փոքր է, դունչը՝ սուր: Մարմնի ընդհ. գունավորումն արծաթափայլ է: Մսվում է ցածրակարգ խեցգետնակերպներով, փափկամարմիններով, երբեմն՝ սեփ. ձկնկիթով, պլանկտոնով: Սևանա լճի ամենաբազմաքանակ ձկնատեսակն է: Ունի արդ. նշանակություն: Արհեստ. բուծման ճանապարհով վերաբնակեցվել են ՀՀ առանձին ջրամբարներում:

ՍԻԳԱՁԿՆԵՐ (Coregonidae), *սաղմոնակերպների* կարգի ձկների ընտանիք: Երկ.՝ 8–150 *սմ*, կ. զ.՝ 4–40 *կգ*: Հայտնի է 30 տեսակ՝ Հս. սառուցյալ օվկ-ի և Ատլանտ. ու Խաղաղ օվկ-ների ավազանների հս. մասերում: Ունի գաղթող, գետ. և լճային ձևեր՝ սովոր. Ս., սպիտակ սաղմոն, մուկսուն, չիր, սիմա, օմուլ ևն: Արդյունագործ. և կլիմայավարժեցման ձկներ են:

ՍԻԳԲԱՆ (Զիգբան, Siegbahn) Կայ Մաննե Բյորիե (1918–2007), շվեդ ֆիզիկոս: ՌԳԱ արտ. անդամ (1994): Կ. Մ. Գ. *Սիգբանի* որդին: Աշակել է քիմ. վերլուծության էլեկտրոն. սպեկտրադիտման եղանակ, առաջին ռենտգենէլեկտրոն. սպեկտրաչափի հեղինակն է: Նորելյան մրց. (1981):

ՍԻԳԲԱՆ (Զիգբան) Կառլ Մաննե Գեորգ (1886–1978), շվեդ ֆիզիկոս: ՌԳԱ արտ. անդամ (1958): Կ. Մ. Բ. *Սիգբանի* հայրը: Ռենտգեն. և միջուկ. սպեկտրադիտման հիմնադիրը: Նորելյան մրց. (1924):

ՍԻԳԻԶՄՈՒՆԴ I (լատ.՝ Sigismundus, հունգ.՝ Zsigmond, չեխ.՝ Zikmund, 1368–1437), Հռոմ. սրբազան կայսրության կայսր՝ 1433-ից, Հունգարիայի թագավոր՝ 1387–1437-ին, Չեխիայի թագավոր՝ 1419–21 և 1436–37-ին՝ Լյուքսեմբուրգների հարստությունից: Գլխավորել է արևմտաեվրոպ. ավատատերերի խաչակրաց արշավանքը թուրքերի դեմ և պարտվել Նիկոպոլի ճակատամարտում (1396): Հռոմի պապի հետ գլխավորել է հուսայանների դեմ պայքարը:

ՍԻԳԻԶՄՈՒՆԴ I (Zygmunt) Ծեր (1467–1548), լեհ. թագավոր և Լիտվայի մեծ իշխան՝ 1506-ից՝ *Յագելոնների* հարստությունից: 1526-ին Սազովիան ներառել է Լեհաստանի կազմի մեջ: Ս. I որոշ փոփոխությունների է ենթարկել *Լևհահայոց դատաստանագիրքը* և 1519-ին ներկայացրել Սեյմին՝ հաստատելու:

ՍԻԳԻԶՄՈՒՆԴ II Օգոստոս (1520–1572), լեհ. թագավոր՝ 1548-ից (թագադրվել է 1530-ին), Լիտվայի մեծ իշխան (1529-ից)՝ *Յագելոնների* հարստությունից: Մասնակցել է *Լիվոնյան պատերազմին* (1558–83) և *Լյուբլինյան ունիային* (1569): Հայաստանի ազատագրության հարցով 1550-ին Ս. II-ի մոտ է եղել կաթողիկոս *Սրեփհաննս Ե Սալմաստեցին*:

ՍԻԳԻԶՄՈՒՆԴ III Վազա (1566–1632), Ռեչ Պոսպոլիտայի թագավոր՝ 1587-ից, Շվեդիայի թագավոր՝ 1592–99-ին՝ Վազա հարստությունից: Ռուսաստանի դեմ ինտերվենցիայի (XVII դ-ի սկզբներ) կազմակերպիչներից: Ս. III-ի արքունիքում ծառայել է հայազգի դիվանագետ Սեֆեր Մուրատովիչը, որը կատարել է պետ. և դիվանագիտ. կարևոր հանձնարարություններ:

ՍԻԳԻԼՅԱՐԻԱ, գետնամուշկազգիների կարգի անհետացած ծառանման բույսերի ընտանիք: Հանդիպում է ներքին կարբոնի՝ պերմի նստվածքներում: Այսնանման բնի բարձր.՝ 10–12 *մ*, երբեմն՝ մինչև 30 *մ*: Ունի հզոր կեղև՝ տերևավոր փորվածքներով:

ՍԻԳԻՐԻԱ, հին ք. ժամանակակից Կոլոմբո ք–ից (Շրի Լանկա) 169 *կմ* հս–արլ.: Ներառում է բուդդ. Սահայանա աղանդի վան. համալիրը (մ. թ. ա. II դ. – XVIII դ.): Կան քարանձավ. տաճարներ, որմնանկարներ ևն: Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՍԻԴԴՈՆՍ (Siddons) Սառա (1755–1831), անգլիացի դերասանուհի: 1775–82-ին՝ «Դրուրի-Լեյն» թատրոնի դերասանուհի: Իզաբելլայի դերով (Սաուտերնի «Ճակատագրական ամուսնություն») հռչակվել է Անգլիայի առաջին ողբերգակ դերասանուհի: Հիմնականում հանդես է եկել Վ. Շեքսպիրի ողբերգություններում (լեդի Աննա, լեդի Մակբեթ, Օֆելյա՝ «Ռիչարդ III», «Մակբեթ», «Համլետ», ևն):

ՍԻԴԵՆՀԵՄ (Sydenham) Թոմաս (1624–1689), անգլիացի բժիշկ, կլինիկ. բժշկագիտ–յան հիմնադիրներից: Հիվանդությունը դիտարկել է որպես կենսընթաց, բուժումը՝ որպես հիվանդի օրգանիզմի բուժիչ ուժերին օգնություն: Նկարագրել է քութեշի, խորեայի, պողագրայի և այլ հիվանդությունների դաս. տեսակները: Ս–ին համարել են «անգլիական Հիպոկրատ»:

ՍԻԴԵՐԻՏ, **երկաթային սպաթ**, կարբոնատների դասի միներալ՝ $FeCo_3$, Mg, Ca խառնուրդներով: Դեղնասպիտակ է, մոխրագույն, երբեմն՝ սպիտակ: Հանդիպում է հատիկավոր ագրեգատների, կոնկրեցիաների, հողախառն կուտակումների և այլ ձևերով: Կարծր.՝ 4, խտ.՝ մոտ 4 *գ/սմ*^{3}: Երկաթի հանքաքարի կարևոր միներալ է:

ՍԻԴԵՐՈՋ (հուն.՝ sideros – երկաթ), փոշեգարություն՝ պայմանավորված երկաթի օքսիդի փոշու երկարատև շնչումով: Ուղեկցվում է թոքերի պարենքիմում շարակց. հյուսվածքի աճակալմամբ, բրոնխաբորբրների առաջացմամբ:

ՍԻԴԻ ԲԵԼ ԱԲԲԵՍ, ք. Ալժիրի հս–արմ–ում, համանուն վիլայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 199 հզ. (2010): Գղտ–յան շրջանների առևտ. կենտրոն է (հացահատիկ, միրգ, այգեգործություն):

ՍԻԴԻՔԲԵԿՈՎ, Թուգելբայ (1912–1997), դրոշզ գրող: Ղրղզ. ԽՍՀ ժող. գրող (1968): Ղրղզ. ԽՍՀ ԳԱ ակադ. (1954): Հեղինակ է «Թեմիր» (1939–40), «Մեր օրերի մարդիկ» (1948), «Լեռների մեջ» (գիրք 1, 2, 1955, 1958), «Կանայք» (գիրք 1, 2, 1962, 1966), «Հասակակիցները» (1977), ինքնակենսագր. «Ճանապարհ» (1982) վեպերի: Ղրղզստանի Հանրապետության հերոս: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949):

ՍԻԴՅԱԿ Վիկտոր Ալեքսանդրովիչ (ծ. 1943), ռուս սուսերամարտիկ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1968): Օլիմպ. խաղերի քառակի (1968, 1972, 1976, 1980), աշխարհի և ԽՍՀՄ բազմակի (1969–79) չեմպիոն:

ՍԻԴՆԵՅ (Sydney), ք. Ավստրալիայի հս–արմ–ում, Նոր Հվ. Ուելս նահանգ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 4,5 մլն (արվարձաններով, 2010): Նվինգստ՝ Պորտ Ջեքսոն ծոցի ափերին (տարեկան բեռնաշրջանառությունը՝ 30 մլն *տ*): Ունի օդանավակայան, մետրո, համալսարան, օպեր. թատրոն (1957–73, Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է), պատկերասրահ, թանգարաններ, ռազմածով. պատկերասրահ: Հիմնադրվել է 1788–ին (1–ին եվրոպ. բնակավայրը՝ Ավստրալիայում):

Հայերը Ս–ում հաստատվել են XIX դ–ի 50–ական թթ–ին: Համայնքն ստվարացել է ԵՀՊ–ից հետո: Գործում են Սբ Հարությունն եկեղեցին (1957–ից), 3 ամենօրյա և 6 կիրակնօրյա վարժարաններ, Հայ եկեղեց. խորհուրդը, տարբեր միություններ, ՀԲԸՄ, ՀՄԸՄ, ՀՕՄ Ս–ի մասնաճյուղերը: Լույս են տենում մի շարք պարբ–ներ: 2015–ին Ս–ում բնակվել է ավելի քան 25 հզ. հայ:

ՍԻԴՆԵՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Ավստրալիայի ամենահին բուհը, աշխարհի հեղինակավոր համալսարաններից: Հիմնադրվել է 1850–ին: 2015–ին ուներ ավելի քան 52 հզ. ուսանող:

ՍԻԴՆԻ, **Սիդնեյ** (Sidney), Ֆիլիպ (1554–1586), անգլիացի գրող: Հեղինակ է «Արկադիա» (հրտ.՝ 1590) հովվերգ. վեպի, «Աստրոֆել և Ստելլա» (հրտ.՝ 1591) սոնետների շարքի, «Պոեզիայի պաշտպանություն» (հրտ.՝ 1595) գեղագիտ. աշխ–յան:

ՍԻԴՈՐԵՆԿՈ Ալեքսանդր Վասիլևիչ (1917–1982), ռուս. երկրաբան: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1966, փոխնախագահ՝ 1975–ից): ԽՍՀՄ երկրբ–յան նախարար (1962–75): Աշխ–ները վերաբերում են անապատների երկրբ–յան և երկրաձևաբանության, հողմահարման, կեղևում հանքառաջացման շարժընթացներին, հանք. հումքի համալիր գնահատականի հարցերին: Լենինյան մրց. (1966):

ՍԻԴՈՐԵՆԿՈ Յուրի Սերգեևիչ (ծ. 1939), ռուս. ուռուցքաբան: ՌԲԴԱ (1999) և ՌԴԱ (2006) ակադ.: ՌԴ գիտ. վաստ. գործիչ (1993), վաստ. գյուտարար (1990): Ներդրել է քաղցկեղի սկրինինգի յուրօրինակ համակարգ, մշակել է քաղցկեղի ժամանակ օրգանապահպանիչ և ֆունկցիան խնայող վիրահատություններ:

ՌԴԱ Ի. Ի. Մեչնիկովի անվ. մրց. (2008):

ՍԻԴՈՐԵՆԿՈ Վիկտոր Ալեքսեևիչ (ծ. 1929), ատոմ. էներգետիկայի բնագավառի ռուս. գիտնական: ՌԴԱ ակադ. (1981): Աշխ–ները վերաբերում են ատոմ. ռեակտորների ստեղծմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1967, 1983):

ՍԻԴՈՐՈՎ Վալենտին Միխայլովիչ (ծ. 1928), ռուս նկարիչ: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1988): ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի ակադ. (1988): Հեղինակ է ընդհանրացված–լակոնիկ ձևերով բնապատկերների («Հաղթանակի օրը», 1975, «Տագնապալի օր», 1985, ևն):

ԽՍՀՄ (1984), ՌԴ (1996) Պետ. մրց–ներ:

ՍԻԴՈՐՈՎ Վենիամին Ալեքսանդրովիչ (1930–2006), ռուս. ֆիզիկոս: ՌԴԱ թղթ. անդամ (1968): Աշխ–ները վերաբերում են տարր. մասնիկների ֆիզիկային, արագացուցչային տեխնիկային: Հանդիպակաց փնջերի եղանակի հեղինակներից է: Լենինյան (1967), ԽՍՀՄ Պետ. (1989) մրց–ներ:

ՍԻԴՈՐՈՎ Վլադիմիր Վասիլևիչ (1924–2000), խորհրդ. զորապետ, ծովակալ (1979): 1978–ից՝ Բալթ., 1981–ից՝ Խաղաղօվկիանոս. նավատորմերի հրամ.: 1986–91–ին՝ ՌԾՆ թիկունքի պետ, ՌԾՆ գլխ. հրամ–ի տեղակալ՝ թիկունքի գծով:

ՍԻԴՐ (ֆրանս.՝ cidre), մրգահատապտղ. թույլ ալկոհոլ. գինի (պարունակում է 5–7 ծավալ. % սպիրտ): Ստացվում է խնձորահյութի խմորմամբ:

ՍԻԴՈՒ, (Մեծ Սիրտ), ծոց Միջերկր. ծովում՝ Լիբիայի ափերին: Երկ.՝ 115 *կմ*, լայն.՝ 465 *կմ*, խոր.՝ մինչև 1374 *մ*: Նվինգստ–ներն են՝ Բենգազին, Էլ–Բուրայկան, Էս–Սիդր:

ՍԻԹԼ, (Seattle), ք. ԱՄՆ Վաշինգտոնի նահնգ–ում: Բն.՝ 614 հզ., ագլոմերացիայում՝ 4 մլն–ից ավելի (2010): Նվինգստ՝ Խաղաղ օվկ–ի Ֆյուջեթ Սաունդ ծոցի ափերին: Ունի օդանավակայան, բուհեր, թատրոններ, թանգարան ևն: Խաղաղօվկ–ի հս–արմ–ի խոշորագույն տնտ. կենտրոն է: Տնտ–յան գլխ. ճյուղը կրթության և առողջապ–յան ծառայություններն են, առևտուրը, ֆին. և ապահովագր. բիզնեսը, լոգիստիկան (մաթ. տրամաբ–յուն), տրանսպորտն ու կապը: Ջրոսաշրջության կենտրոն է (այդ թվում՝ գործարար., տարեկան 9 մլն–ից ավելի զբոսաշրջիկ): Կա կինո–, տեսա– և երաժշտ. ինդուստրիա: Գործում են միջազգ. խոշոր ընկ–ների շտաբ–գրասենյակներ, ծրագր. ապահովման մշակման և արտադրման (Ս–ում են *«Մայքրոսոֆթ»* ընկ–յան գլխ. գրասենյակը և լաբորատորիան), կենսատեխնոլոգ. և դեղագործ. արտադր–յան, ավիահրթռաշինության, փայտամշակման, սննդի և արդ–յան այլ ճյուղեր, Խաղաղօվկիանոս. գիտ. կենտրոնը: Հիմնադրվել է 1851–ին:

ՍԻԵՆԱ (Siena), ք. Իտալիայի Տոսկանա մարզում, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 56,4 հզ. (2010): Ունի համալսարան (XIII դ–ից): Ս. հիմնադրել են հռոմեացիները մ. թ. ա. I դ–ում: XIII–XIV դդ–ում Եվրոպայում բանկ–վաշխառուական և արհեստագործ. խոշորագույն կենտրոն էր: Ք–թանգարան է (պահպանվել է միջնադար. տեսքը): Պահպանվել են գոթ. տաճարը (XIII–XIV դդ.), Պալացցո Պուբլիկոն (XIII դ–ի վերջ–XIV դ–ի սկիզբ, Ա. Լորենցետտիի, Ս. Մարտինիի որմնանկարներով), եկեղեցիներ և պալատներ (XIII–XV դդ.): Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՍԻԵՆԻՏ (հինեգիպտ. Սուն, այժմ՝ Ասուան ք–ի հուն. անվանումից), լրիվ բյուրեղ. հրային ապար: Բաղկացած է հիմնականում կալիում. դաշտ. սպաթից, պլագիոկլազներից, գունավոր միներալների (եղջերախաք, բիոտիտ, պիրոքսեն, հազվադեպ՝ օլիվին) խառնուրդից: Երբեմն պարունակում է քվարց: Սիլիկահողի պարունակությունը՝ 55–65 %: Օգտագործվում է որպես շին. և երեսպատման քար: ՀՀ–ում տարածված է Կոտայքի, Լոռու, Արագածոտնի մարզերում (Փամբակի լ–շղթա), Սյունիքի մարզում (Բարգուշատի լ–շղթա): Նեֆելին. Ս–ների որոշակի պաշարներ կան նաև Վայոց ձորի մարզում:

ՍԻԵՆՖՈՒԵԳՈՍ (Cienfuegos) Կամիլիո (1932–1959), Կուբայի ժող. հերոս: Ֆ. *Բատիստայի* բռնապետության դեմ զինվ. պայքարի ժամանակ՝ Ապստամբ. բանակի դեկ–ներից: Զոհվել է ավիավթարից:

ՍԻԵՆՖՈՒԵԳՈՍ, ք. Կուբայի հվ–ում, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 161 հզ. (2010): Նվինգստ՝ Կարիբյան ծովի ափին (շաքարի մեծածավալ արտահանում): Հիմնադրել են ֆրանսիացիները 1819–ին: Ս–ի կենտրոնն օրգանապես զուգակցված է ճարտ. ոճերով (բարոկկո, նեոկլասիցիզմ, մոդեռն): Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՍԻԵՌԱ, ատամնավոր կատարներով լ–շղթաների անվանումն Իսպանիայում, Հս. և Հվ. Ամերիկայում, Աֆրիկայի որոշ շրջաններում, Ֆիլիպիններում:

ՍԻԵՌԱ ԼԵՈՆԵ (Sierra Leone), **Սիեռա Լեոնեի Հանրապետություն** (Republic of Sierra Leone), պետություն Արմ. Աֆրիկայում՝ Ատլանտ. օվկ–ի ափին: Սահմանակից է Գվինեային և Լիբերիային: Տարածքը՝ 71,7 հզ. *կմ*^{2}, բն.՝ 5,1 մլն (2009): Մայրաքաղաքը՝ *Ֆրիթաուն*: Պետ. լեզուն՝ անգլ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ ներկայացուցիչների պալատը: Հավատացյալների մեծ մասը մահմեդական է, կան նաև քրիստոնյաներ և ավանդ. հավատալիքների հետևորդներ: Բաժանված է 3 վարչ. պրովինցիաների և 1 մարզի (Արևմտյան): Անդամակցում է ՄԱԿ–ին, Աֆրիկ. միությանը: Աշխարհի ամենաաղքատ երկրներից է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 900 ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է հանքանյութ, գյուղմթերք, ձուկ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ լեոնե:

1808–ին Ս. Լ.–ի առափնյա մասը դարձել է անգլ. գաղութ, իսկ ներքին շրջանները

1896–ին՝ պրոտեկտորատ: 1961–ից անկախ պետություն է, 1969–ին ստեղծվել է միակուս. կառ–յուն՝ Համաժող. կոնգրեսի (հիմն.՝ 1960) գլխավորությամբ: 1971–ին դարձել է նախագահ. հանրապետություն: 1978–ին ուժի մեջ է մտել նոր սահմանադրությունը, որով իշխող Համաժող. կոնգրես կուս–յունը հռչակվել է միակ իշխող կուս–յունը: 1992–ին ռազմ. հեղ–յան արդյունքում իշխանության է եկել Ժամանակավոր ազգ. իշխող խորհուրդը, որը 1996–ին տապալվել է ռազմ. հեղաշրջմամբ: 1990–ական թթ–ին քաղաքաց. պատերազմի պայմաններում անցկացվել են առաջին ընտրությունները՝ բազմակուս. համակարգով: 2000–ին Ս. Լ–ի Կառ–յան և ապստամբների միջև ՄԱԿ–ի միջնորդությամբ կնքվել է խաղաղության համաձայնագիր:

ՍԻԵՌԱ ՄԱԴՐԵ (Sierra Madre), լ–շղթա Կենտր. Ամերիկայի Կորդիլիերաների համակարգում, Մեքսիկայի հվ–արլ. ծայրում և Գվատեմալայում՝ Խաղաղ օվկ–ի ափերի երկայնքով: Երկ.՝ 350 *կմ*, բարձր.՝ մինչև 4110 *մ* (Տականա հրաբուխ): Կազմված է **արևելյան** (երկ.՝ 1350 *կմ*, բարձր.՝ մինչև 3540 *մ*՝ Պենյա Նևադա լ.), **արևմտյան** (երկ.՝ մոտ 1250 *կմ*, բարձր.՝ մինչև 3348 *մ*՝ Չորերաս լ.) և **հարավային** (երկ.՝ 1000 *կմ*, բարձր.՝ մինչև 3703 *մ*՝ Տեոտեպեկ լ.) լ–բազուկներից:

ՍԻԵՌԱ ՄՈՐԵՆԱ (Sierra Morena), լ–ներ Իսպանիայում: Երկ.՝ 400 *կմ*, բարձր.՝ մինչև 1323 *մ*: Ծածկված է մշտադալար թփուտներով և անտառով:

ՍԻԵՌԱ ՆԵՎԱԴԱ (Sierra Nevada), լ–շղթա Հս. Ամերիկայի Կորդիլիերաների համակարգում՝ ԱՄՆ–ի հվ–արմ–ում: Երկ.՝ 750 *կմ*, բարձր.՝ մինչև 4418 *մ* (Ուիթնի լ.): Կան ցեխահրաբուխներ, տաք ջրեր: Ազգ. պարկերը՝ Յոսեմիթյան, Սեքվոյա, Քինգս Կանիոն:

ՍԻԵՌԱ ՆԵՎԱԴԱ, լ–զանգված Անդալուզյան լ–ներում՝ Իսպանիայի հվ–ում, ամենաբարձրը՝ Պիրենեյան թ–կղզում (Մուլասեն լ., 3482 *մ*):

ՍԻԵՌԱ ՆԵՎԱԴԱ ԴԵ ՍԱՆՏԱ ՄԱՐՏԱ (Sierra Nevada de Santa Marta), լ–զանգված Հս. Անդերում՝ Կոլումբիայում: Բարձր.՝ 5775 *մ* (Կրիստոբալ Կոլոն լ.):

ՍԻԶԱԽՈՏ, *դաշտավուկազգիների* ընտանիքի միամյա կամ բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 20 տեսակ՝ Միջերկրածովայքում: Աշխում են թիթեռնածաղկավոր խոտաբույսերի հետ: Ս. մարգագետն. կերաբույս է:

ՍԻԶԻՓՈՍ, Կորնթոսի արքան հուն. դիցյան մեջ: Ս., խորամանկելով աստվածներին, երկու անգամ խուսափել է մահից, որի համար դատապարտվել է ստորերկրյա աշխարհում հսկայական քարը լեռն ի վեր բարձրացնելուն, որը գագաթ հասցնելուն պես կրկին ցած է գլորվել: Փխբ. իմաստով՝ «Ս–ի աշխատանք» նշանակում է ծանր, անպտուղ աշխ.:

ՍԻԶՐԱՆ, ք. ՌԴ Սամարայի մարզում, նվինգստ Վոլգայի ափին: Երկթղ. հանգույց է: Բն.՝ 178,9 հզ. (2009): Գործում են նավթավերամշակման, «Տյաժմաշ», «Սիզրանսելմաշ», «Ռոսլանդ» ավտոհավաքման, ավտոագրեգատ., «Պլաստիկ» գործարանները: Կա երկրագիտ. թանգարան: Հիմնադրվել է 1683–ին:

ՍԻԹԱՐ, հնդ. լար. կսմիթավոր երաժշտ. գործիք (XIII–XIV դդ.): Նման է *լյուտնյային*: Ունի 7 հիմն. և 9–13 ռեզոնանսող լարեր:

«ՍԻԼ» ԿՈՆՑԵՌՆ, ընկ–ների համախումբ ՀՀ–ում: Ստեղծվել է 1996–ին: Միավորում է արտադր–յան, առևտրի, շին–յան, սպասարկման և ապահովագրության ոլորտների ավելի քան 40 ընկ.: Կենտրոնատեղին՝ Երևանում:

ՍԻԼԱԼ, հրակայուն թուջ, պարունակում է 5–6 % Si: Ս–ից պատրաստում են ճաղացանցեր, ջերմափոխանակիչների տարրեր ևն:

ՍԻԼԱՆՊԱՅ (Sillanpää) Ֆրանս Էմիլ (1888–1964), ֆինն գրող: Հեղինակ է «Արդար աղքատություն» (1919), շարունակությունը՝ «Հիլտու և Ռագնար» (1923) հոգեբ., «Պարմանուհի ննջեցյալը» (1931), «Կյանք և արև» (1916), «Տղամարդու ուղին» (1932), «Մարդիկ ամառային գիշերում» (1934) վեպերի, «Պատմում եմ և պատկերում» (1954) և ինքնակենսագր. այլ վեպերի:

Նոբելյան մրց. (1939):

ՍԻԼԱՆՏԵՎ Ալեքսանդր Պետրովիչ (1918–1996), խորհրդ. ռազմ. գործիչ, ավիացիայի մարշալ (1976): ԽՄ հերոս (1941): ՀՄՊ–ի ժամանակ՝ կործանիչ ավիացիայում սավառնակախմբի հրամ. և գնդի շտուրման: Վարել է 35 օդ. մարտեր, խփել 8 ինքնաթիռ: 1969–ից՝ ԳԾ պետ և 1–ին տեղակալ, 1978–80–ին՝ ՌՕՈՒ գլխ. հրամ–ի տեղակալ: ԽՄՀՄ Պետ. մրց. (1978):

ՍԻԼԱՆՏԵՎ Յուրի Վասիլևիչ (1919–1983), ռուս. դիրիժոր, ջութակահար, կոմպոզիտոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1975): 1958–ից՝ Համամիութ. ռադիոյի և կենտր. հեռուստատեսության էստրադային–սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր: Հեղինակ է «Երիտասարդություն» (1977) բալետի, նաև օրատորիայի, սիմֆոնիայի, գործիք. և այլ երկերի:

ՍԻԼԱՐԴ, **Սցիլարդ** (Szilard), Լեո (1898–1964), հունգար ֆիզիկոս: 1939–ին (համահեղ.) հայտնաբերել է ուրանի միջուկների քայքայման ժամանակ առաջացող 2–րդային նեյտրոնները և հիմնավորել ուրանի տրոհման շղթ. միջուկ. ռեակցիայի հնարավորությունը: Առաջին միջուկ. ռեակտորի (1942) ստեղծողներից է: Է. *Ֆերմիի* հետ որոշել է ^{235}U–ի կրիտիկ. զանգվածը: Հանդես է եկել միջուկ. փորձարկումների դեմ:

ՍԻԼԵԶԻԱ, (լեհ.՝ Śląsk, չեխ.՝ Slezsko, գերմ.՝ Schlesien), պատմ. մարզ Օդեր գետի վերին և միջին հոսանքներում: X դ–ում եղել է լեհ. պետության կազմում, XIV դ–ում՝ չեխ. թագապատկան տարածք: 1526–ին Ս., բացի 3 իշխանություններից, որոնք XV դ–ի վերջին վերամիավորվել էին Լեհաստանին, անցել է *Հաբսբուրգների* գերիշխանության տակ, իսկ 1742–ից՝ Պրուսիայի (բացառությամբ 2 իշխանության, որոնց տարածքը մնացել է Հաբսբուրգներին), 1920–ին մտել է Չեխոսլովակիայի կազմի մեջ: 1919–ին բաժանվել է 2 պրովինցիայի՝ Վերին Ս. [կենտրոնը՝ Օպպելն (Օպոլե)] և Ներքին Ս. [կենտրոնը՝ Բրեսլաու (Վրոցլավ)]: 1922–ին Ազգերի լիգայի խորհուրդը Վերին Ս–ի մոտ 1/3–ը հանձնել է Լեհաստանին, Պոտսդամի խորհրդաժողովը (1945) վերադարձրել է Ս–ի տարածքի մեծ մասը:

ՍԻԼԵԶԻԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ, Լեհաստանի հվ–ում: Բարձր.՝ 200–300 *մ*: Ս. բ–ի տարածքում է Վերինսիլեզ. քարածխի ավազանը:

ՍԻԼԻԿԱԹԵՐՄԻԱ, մետաղների օքսիդները (հանքաքար, խտանյութ) սիլիցիումով վերականգնելու միջոցով մետաղների և համաձուլվածքների ստացման եղանակ. ուղեկցվում է մեծ քանակությամբ ջերմության անջատումով: ***Մետաղաթերմիայի*** տարատեսակ է:

ՍԻԼԻԿԱԹԹՈՒՆԵՐ, ջրում վատ լուծվող չափազանց թույլ թթուներ՝ $nSiO_2 \cdot mH_2O$ ընդհ. բանաձևով: Բնական Ս. են օպալը, տրեպելը, դիատոմիտը ևն: Օգտագործվում են թղթի և մանածագործ. արդ–յան մեջ:

ՍԻԼԻԿԱԺԵԼ, փոքր ծակոտիներով մարմին, պոլիսիլիկաթթվի ջրազրկված ժելը: Բաղկացած է SiO_2–ից: Կիրառում են խլադոնները, սպիրտները, ամինաթթուները, վիտամինները, հակաբիոտիկները ևն չորացնելու, մաքրելու և բաժանելու համար, որպես ադսորբենտ՝ քրոմատագրության մեջ, կատալիզորդի կրիչ:

ՍԻԼԻԿԱՎԼՈՐՈՒՄ, նյութերի մակերևութ. կամ ծավալ. հագեցում սիլիցիումով: Նյութը մշակում են սիլիցիումի գոլորշու մեջ: Ս–ի կիրառմամբ բարձրանում են կոռոզիադիմացկունությունը, մաշակայունությունը, կրակակայունությունը:

ՍԻԼԻԿԱՏԱՅԻՆ ԲԵՏՈՆ, ստացվում է ավտոկլավներում կրասիլիցիումահող. կապակցանյութի, անօրգ. լցանյութի (սովորաբար՝ ավազի) և ջրի խառնուրդի ջերմախոնավ. մշակմամբ (175–200°C պայմաններում): Օգտագործվում է որմնաբլոկների և պանելների, վերնածածկերի, երկաթբետոնե շինվածքների այլ տարրերի պատրաստման համար:

ՍԻԼԻԿԱՏԱՅԻՆ ՆԵՐԿԵՐ, ներկեր՝ հեղուկ ապակու հիմքի վրա: Կիրառվում են գլխավորապես շին–յան մեջ՝ սվաղի, աղյուսի, բետոնի, քարի վրա:

ՍԻԼԻԿԱՏՆԵՐ (< լատ. silex – կայծքար), սիլիկաթթուների աղերը: Ս. սիլիկաթթուների նման սովորաբար բարձրմոլ. պոլիմերներ են: **Բնական Ս.**, մանրածակոտկեն մարմին են, ստացվում են բազմասիլիկաթթվի գելի շիկացումով: Կազմված է SiO_2–ից: Կիրառվում է տարբեր նյութերի չորացման, մաքրման և բաժանման համար, որպես ադսորբենտ՝ քրոմատագրության մեջ, կատալիզորդակրիչ ևն:

ՍԻԼԻԿԱՏՈՋ (լատ.՝ silex – սիլիցիում), փոշեգարությունների խումբ (ասբեստոզ, տալկոզ, օլիվինոզ ևն), որոնք առաջանում են սիլիկատներ պարունակող փոշին շնչելուց:

ՍԻԼԻԿՅԱՆ (Սիլիկով) Մովսես Բաբայի (1862–1937), ռուս. բանակի գեն–մայոր (1917): ՀՀ բանակի գեն–լեյտ. (1919): Ռուս. բանակում ծառայել է 1884–ից: Մասնակցել է ԱՀՊ–ին (Կովկաս. ռազմաճակատում). 1915–ին՝ հրաձգ. գնդի հրամ., 1916–ին գլխավորել է Վանի զորախումբը, աչքի ընկել Մուշի, Բիթլիսի, Էրզրումի մարտերում: 1918–ի հունվ–ին՝ Հայկ. բանակ. կորպուսի 1–ին հրաձգ. դիվիզիայի, ապա՝ Երևանյան զորախմբի, մայիսին՝ կանոնավոր զորամասերի և աշխարհազորայինների ընդհ. հրամ.: Սարդարապատում և Բաշ Ապարանում ջախջախիչ հարված է հասցրել թուրք. զորքերին, կասեցրել նրանց հարձակումը: Մարշալ Հ. Բաղրամյանը Ս–ին բնութագրել է որպես «ժամանակի հայ գեներալներից ամենաշնորհալին»: 1920–ի աշնանը եղել է հայկ. զորքերի հրամ. Կարս–Ալեքսանդրապոլ ճակատում, որտեղ չի հաջողել կասեցնել առաջացող թշնամու գերակշիռ ուժերը: 1937–ին անհիմն բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել: ՀՀ 1–ին հանրա–

պետության «Գևորգիևյան խաչ» (1918), Ռուսաստանի Սբ Ստանիսլավի 2-րդ աստիճանի (1910), Սբ Գեորգիի (1916) շքանշաններ:

ՍԻԼԻՆ Վիկտոր Պավլովիչ (ծ. 1926), ռուս ֆիզիկոս-տեսաբան: ՌԳԱ թղթ. անդամ (1991): Աշխ-ները վերաբերում են մետաղների էլեկտրոն. տեսությանը, պլազմայում ընթացող համակից շարժընթացներին, մագնիսակարգավորված մետաղների հատկություններին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1970, 1987):

ՍԻԼԻՑԻԴՆԵՐ, սիլիցիումի միացությունները մետաղների հետ, օր.՝ $TASi_2$, Mn_3Si, Cr_5Si_3: Բազմաթիվ Ս. դժվարահալ բյուրեղ. նյութեր են, քիմիապես կայուն են բարձր ջերմաստիճաններում: Խեցե-մետաղների բաղադրիչ են, քիմ. սարքավորումների կոռոզիա- և հրակայուն երեսպատող նյութեր են:

ՍԻԼԻՑԻՈՒՄ (Silicium, < լատ. silex – կայծքար), Si, տարրերի պարբեր. համակարգի IV խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 14, ա. զ.՝ 28,0855: Մուգ մոխրագույն մետաղ. փայլով բյուրեղ. նյութ է, խտ.՝ 2,33 $գ/սմ^3$, $t_{հալ.}$՝ 1415°C: Կայուն է քիմ. ազդակների նկատմամբ: Ս. կազմում է երկրակեղևի զանգվածի 29,6 %-ը (տարածվածությամբ երկրորդը՝ թթվածնից հետո): Բնության մեջ հանդիպում է սիլիկահողի (SiO_2) և սիլիկատների ձևով: Ս. կարևոր կիսահաղորդչ. նյութերից է, առանձին պողպատների և այլ համաձուլվածքների բաղադրիչ (մեծացնում է մեխ. ամրությունը և կայունությունը կոռոզիայի նկատմամբ, լավացնում ձուլվելու հատկությունները):

ՍԻԼԻՑԻՈՒՄԱՋՐԱԾԻՆՆԵՐ, **սիլաններ**, սիլիցիումի հիդրիդներ: Հայտնի են միայն հագեցած Ս.՝ SiH_4-ից (գազ) մինչև Si_8H_{18}: Թունավոր են, ունեն տհաճ հոտ: Օդում ինքնաբոցավառվում են: SiH_4-ից ստանում են մաքուր կիսահաղորդչ. սիլիցիում:

ՍԻԼԻՑԻՈՒՄԱՖՏՈՐԱԶՐԱԾՆԱԿԱՆ ԹԹՈՒ, H_2SiF_6, ուժեղ երկհիմն թթու: Գոյություն ունի միայն ջր. լուծույթում: Կիրառում են ***սիլիցիումաֆտորիդներ*** ստանալու համար: Թունավոր է:

ՍԻԼԻՑԻՈՒՄԱՖՏՈՐԻԴՆԵՐ, **ֆտորոսիլիկատներ**, սիլիցիումաֆտորաջրածնական թթվի աղերը: Նատրիումի Ս.՝ Na_2SiF_6, կիրառում են թթվակայուն ցեմենտների, արծնի արտադրություններում: Մագնեզիումի, ցինկի, ալյումինի Ս. (ֆլյուատներ) օգտագործում են շին. քարին անջրաթափանցելիություն հաղորդելու համար: Թունավոր են:

ՍԻԼԻՑԻՈՒՄԻ ԵՐԿՕՔՍԻԴ, **սիլիկահող**, SiO_2, սիլիկաթթվի անհիդրիդ: Անգույն, դժվարահալ, պինդ նյութ է, $t_{հալ.}$՝ 1728°C: Բնության մեջ քվարց միներալն է: Ս. ե. կիրառում են ապակու, խեցեղենի, հղկափոշու, բետոնի, աղյուսի ևնի արտադրություններում, սիլիցիում ստանալու համար, որպես լցանյութ՝ ռետինի արտադր-յան մեջ, քրոմատագրության մեջ, քվարցի բյուրեղները՝ ռադիոտեխնիկայում և անդրաձայն. կայանքներում:

ՍԻԼԻՑԻՈՒՄԻ ԿԱՐԲԻԴ, տես ***կարբորունդ***:

ՍԻԼԻՑԻՈՒՄՕՐԳԱՆԱԿԱՆ ԿԱՈՒՉՈՒԿՆԵՐ, **սիլիկոնային կաուչուկներ**՝ [–R, R'Si–O–]n (R, R'-ն օրգ. ռադիկալներ են) ընդհ. բանաձևով սինթետիկ կաուչուկներ: Կիրառվում են հաղորդալարերի և մալուխների, արյան փոխներարկման խողովակների, պրոթեզների (օր.՝ սրտի արհեստ. փականների) ևնի արտադր-յան մեջ: Հեղուկ Ս. կ. հերմետիկներ են:

ՍԻԼԻՑԻՈՒՄՕՐԳԱՆԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐ, **սիլիկոնային յուղեր**, ոչ մեծ մոլ. զանգվածով և ռեակցիոնունակ խմբեր չպարունակող օրգանոսիլօքսանային օլիգոմերներ և պոլիմերներ: Կիրառվում են որպես հիդրավլիկ հեղուկներ, հիդրոֆոբարարներ, քսայուղեր ևն:

ՍԻԼԻՑԻՈՒՄՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, տարրօրգ. միացություններ, որոնց մոլ-ներում սիլիցիումի ատոմն անմիջականորեն կամ թթվածնի ատոմի միջոցով միացած է ածխածնի ատոմի հետ: Հայտնի են, օր., օրգանոսիլաններ՝ R_4Si, օրգանոսիլոքսաններ՝ $R_3SiOSiR_3$, ևն, որտեղ R-ն օրգ. ռադիկալ է: Կիրառում են սիլիցիումօրգ. հեղուկներ, կաուչուկներ, սոսինձներ, լաքեր ստանալու համար:

ՍԻԼԻՑԻՈՒՄՕՐԳԱՆԱԿԱՆ ՊՈԼԻՄԵՐՆԵՐ, սինթետիկ պոլիմերներ, որոնց մոլ-ներում պարունակվում են սիլիցիումի և ածխածնի ատոմներ: Արդ-յան մեջ առավել մեծ նշանակություն ունեն պոլիօրգանոսիլօքսանները (պոլիսիլօքսաններ, սիլիկոններ)՝ HO[–Si(R,R')–O–Si(R.R')–]nH (R,R'-ն օրգ. ռադիկալներ են): Կախված մոլ. զանգվածից՝ Ս. պ. լինում են մածուցիկ անգույն հեղուկներ (***սիլիցիումօրգանական հեղուկներ***), պինդ էլաստիկ (***սիլիցիումօրգանական կաուչուկներ***) կամ փխրուն նյութեր (սիլիցիումօրգ. պլաստիկներ): Ս. պ-ի առավել կարևոր հատկություններն են դիէլեկտրիկ. բնութագրերը, բարձր ջերմակայունությունը, ջրվախությունը, ֆիզիոլոգ. պասսիվությունը, որոշ պոլիմերներ սառնակայուն են:

ՍԻԼԻՑԻՈՒՄՕՐԳԱՆԱԿԱՆ ՍՄՈՒՂՆԵՐ, սիլիցիումօրգ. պոլիմերներ պարունակող սոսնձող բաղադրություններ: Օգտագործվում են մետաղները և ջերմակայուն ոչ մետաղ. նյութերը, ջերմակայուն ռետինը, մետաղները, ջերմամեկուսիչ և ձայնամեկուսիչ նյութերը պողպատին և տիտանի համաձուլվածքներին սոսնձելու համար:

ՍԻԼԼՈԳԻԶՄ (հուն.՝ syllogismos), դեդուկտիվ միջնորդավորված մտահանգում, որտեղ սուբյեկտներն ու պրեդիկատները կապող 2 նախադրյալները միավորված են ընդհ. (միջին) տերմինով, որն ապահովում է հասկացությունների միակցումը U-ի եզրակացության մեջ: U-ի կանոնները քննարկվում են ***սիլլոգիստիկայում***:

ՍԻԼԼՈԳԻՍՏԻԿԱ (հուն.՝ syllogistikos – մտահանգում կատարող), տրամաբ. դեդուկցիայի մասին *Արիստոտելի* ստեղծած պատմականորեն առաջին ուսմունքը, որտեղ մտահանգումները դիտարկվում են որպես ***սիլլոգիզմներ***:

ՍԻԼՈՆ (Siloé) Դիեգո դե (մոտ 1490–1563), Վերածննդի շրջանի իսպանացի ճարտ., քանդ.: Գոթ. կառույցներում ներմուծել է Վերածննդի շրջանի ճարտ-յան տարրեր (տաճար՝ Գրանադայում, 1528–63):

ՍԻԼՈՍ (իսպ.՝ silos, < silo – նկուղ, ցորենի պահեստահոր), հյութալի կեր գղտ. կենդանիների համար. պատրաստում են անօդ պայմաններում խոտի կանաչ զանգվածի պահածոյացմամբ: Ըստ հումքի տեսակի՝ տարբերում են եգիպտացորենի, կարտոֆիլի, արևածաղկի և այլ Ս-ներ:

ՍԻԼՎԱ (Silva), **Լուլա դա Սիլվա** (Lula da Silva), Լուիս Ինասիու (ծ. 1945), Բրազիլիայի նախագահ՝ 2003–11-ին: Բրազիլիայի աշխատավորների սոց. կուս-յան պատվ. նախագահ:

ՍԻԼՎԱ, գետ Միջին Ուրալում, թափվում է Կամայի ջրամբարը: Երկ.՝ 493 *կմ*, ավազանը՝ 19,7 հզ. $կմ^2$, ջրի միջին ծախսը՝ 144 $մ^3/վ$: Կա լաստառաքում: Նավարկելի է գետաբերանից 218 *կմ*:

ՍԻԼՎԱՆՈՒՄ, անտառների, դաշտերի, երամների աստվածը հռոմ. դից-յան մեջ:

ՍԻԼՎԵՐ ՊԻԿ (Silver Peak), լիճ ԱՄՆ Նևադա նահ-ում. ջուրը պարունակում է 0,04 % Li: Շահագործվել է 1965-ից: Ընդհ. պաշարները՝ 280 հզ. *տ* Li_2O:

ՍԻԼՎԻՆ [Sylvius – հոլանդացի բժիշկ և քիմիկոս Ֆ. Բոեի (1614–1672) լատինացված անունից], հալոգենների կարգի միներալ. քիմ. կազմը՝ KCL: Պարունակում է 52,48 % K: Կարծր.՝ 2, խտ.՝ 1990 $կգ/մ^3$: Սպիտակ է, երկաթի օքսիդի խառնուրդի դեպքում՝ կարմիր: Բնության մեջ հալիտի, կառնալիտի հետ նստում է աղարեր նստվածքներում՝ երբեմն առաջացնելով կալիում. աղերի խոշոր հանքավայրեր:

ՍԻԼՎԻՈՒՍ (Sylvius) Յակոբուս (Ժան Դյուբուայի լատինացված անունը, Dubois, 1478–1555), ֆրանսիացի անատոմ: Առաջիններից է կատարել մարդկանց դիակների անատոմ. հետազոտություններ, ուսումնասիրել սիներակների, որովայնամզի և այլ օրգանների կառուցվածքը:

ՍԻԼՎԻՈՒՍ ՖՐԱՆՑԻՍԿՈՒՍ [Ֆրանսուա Դյուրուա, Ֆրանց դե լե Բոե (լատ.՝ Franciscus Silvius), հոլանդացի բժիշկ, ֆիզիոլոգ, անատոմ և քիմիկոս, յատրոքիմիայի հիմնադիրներից: Նկարագրել է (1611) ճակատային բիլթը քունքայինից բաժանող ակոսը (սիլվյան ակոս) ևն, նաև նորածինների դեղնախտը, թոքախտի ժամանակ՝ թմրիկները թոքերում:


ՍԻԼՈՒՄԻՆ, ալյումինի հիմքով թեթև դյուրաձույլ համաձուլվածքներ՝ Si-ի (3–13 %, երբեմն՝ մինչև 26 %) և որոշ տարրերի (Cu, Mn, Mg, Zn, Ti, Be) հետ: Ս-ից պատրաստում են բարդ ձևվածքով դետալներ, հիմնականում՝ ավտո- և ավիաշին-յան մեջ:

ՍԻԼՈՒՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ, երկրբ. ժամանակաշրջան, պալեոզոյան խմբի 3-րդ փուլը՝ օրդովիկից հետո, դևոնից առաջ: Սկիզբը՝ 443,8 ±1,5 մլն տարի առաջ, ավարտը՝ 419,2±3,2 մլն տարի առաջ, տևողությունը՝ 25 մլն տարի:

ՍԻԼՔՐՈՄ, հրաեստ և հրակայուն պողպատներ, պարունակում են Cr (5–14 %) և Si (1–3 %): Ս-ից պատրաստում են մխոց. շարժիչների փականներ, ջերմափոխանակիչների տարրեր ևն:

ՍԻԼՕՔՍԱՆՆԵՐ, մոլ-ում սիլիցիումի և թթվածնի միմյանց հաջորդող ատոմներ պարունակող միացություններ: Առավել մեծ նշանակություն ունեն բարձրմոլ. Ս՝ պոլիօրգանոսիլօքսանները: Տես ***Սիլիցիումօրգանական պոլիմերներ***:

ՍԻԼՖՈՆ (անգլ.՝ Sylphon ֆիրմայի անունից), բարակապատ (սովորաբար՝ մետաղե) խողովակ՝ լայնակի ծալքավորած կողային մակերևույթով, ձգվում և սեղմվում է առանցքի ուղղությամբ (զսպանակի նման)՝ մեխ. ուժի կամ արտաքին ու ներքին ճնշումների տարբերության ազդեցությամբ: Կիրառում են ալնևմաավտոմատիկայում (որպես զգայուն մարմին), խողովակաշարերի ճկուն միակցման համար ևն:



Սիլֆոնի կտրվածքը

ՍԻԽՈՏԵ–ԱԼԻՆ, լեռն. երկիր ՌԴ Խաբարովսկի և Պրիմորիեի երկրամասերում՝ Ճապոն. ծովի և Ուսուրի ու Ամուր գետերի հովիտների միջև: Երկ.՝ 1200 *կմ*, բարձր.՝ մինչև 2090 *մ* (Տորդոկի Յանի լ.): Ս–Ա–ում կան հնագույն սառածության հետքեր: Լանջերը ծածկված են անտառներով: Ս–Ա–ի կենտրոնը Համաշիս. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՍԻԽՈՏԵ–ԱԼԻՆԻ ԵՐԿՆԱՔԱՐ, երկաթե երկնաքար, ընկել է ՌԴ Սիխոտե–Ալինի ճյուղավորումներում 1947–ի դեկտ. 12–ին: Ընկած տեղում առաջացել են 100–ից ավելի խառնարաններ և երկնաքարի բազմաթիվ կտորներ՝ ցրված մինչև 3 *կմ*^{2} մակերևույթով: Ընդհ. զանգվածը եղել է 70 *տ* (հավաքվել է 27 *տ*):

ՍԻԿԱ, (Sica) Վիտորիո դե (1901–1974), իտալացի կինոռեժ., դերասան: Կինոյում նեոռեալիզմի հիմնադիրներից («Հեծանիվ հափշտակողները», 1948, «Ումբերտո Դ.», 1951, «Ամուսնություն իտալական ձևով», 1964, «Արևաճաղիկներ» 1969, խորհրդ–իտալ–ֆրանս., «Ուղևորություն», 1974, ևն): Նկարահանվել է «Գեներալ Դելլա Ռովերե», «Հաց, սեր և երևակայություն», «Նեապոլի ոսկին» և այլ կինոնկարներում: Ֆիլմերին բնորոշ են ժանր. բազմազանությունը, մարդասիրությունը, հոգեբ. խորությունը, հյութեղ հումորը, դերասան. խաղի վարպետությունը:

ՍԻԿԵՅՐԱ (Siqueira) Ժոզե (1907–1985), բրազիլացի կոմպոզիտոր, դիրիժոր: Բրազիլիացի սիմֆ. նվագախմբի հիմնադիրներից (1940, գեղ. ղեկ.՝ մինչև 1948–ը): Հեղինակ է օպերաների, բալետների, օրատորիայի, սիմֆոնիաների և այլ գործերի:

ՍԻԿԵՅՐՈՍ, **Ալֆարո Սիկեյրոս** (Alfaro Siqueiros), Դավիդ (1896–1974), մեքսիկացի գեղանկարիչ: ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի պատվ. անդամ (1967): Ազատության և խաղաղության պայքարի պաթոսն արտահայտելու համար օգտագործել է վառ հակադրություններ, ձևերի դինամիկա, մշակել է պատկերման նոր միջոցներ և տեխ. եղանակներ: Ստեղծել է մոնումենտալ որմնանկարներ (Էլեկտրիկների արհմիության ակումբի, 1939, Գեղեցիկ արվ–ների պալատի, 1945, 1950–51, «Պոլիֆորում» թանգարանի, 1971, բոլորը՝ Մեխիկոյում): Միջազգ. Լենինյան մրց. (1967):

ՍԻԿԿԻՄ, նինգ Հնդկաստանում՝ Հիմալայների արլ–ում: Վարչ. կենտրոնը՝ Գանգտոկ: Տարածքը՝ 7,1 հզ. *կմ*^{2}, բն.՝ 607,9 հզ. (2014): XVI–XVIII դդ–ում Ս. կախվածության մեջ է եղել Տիբեթից: XIX դ–ից մինչև 1947–ը Ս–ի իշխանությունը ենթարկվել է Մեծ Բրիտանիային: 1949–ին հաստատվել է հնդ. պրոտեկտորատ: 1975–ից Հնդկաստանի նինգ է:

ՍԻԿՈՋ (հուն.՝ sykosis – խոցոտում), **թզախտ**, մազապարկերի (հաճախ՝ մորուքի, բեղերի) ստաֆիլոկոկ. (հասարակ) կամ սնկային (մակաբուծ.) ծագման բորբոքում: Բնորոշվում է մազապարկի բացվածքում կոնաձև հանգուցիկների (թարախ. գլխիկով) առաջացմամբ, որոնք միաձուլվում են, դրանց շուրջ մաշկը բորբոքվում է, կոշտանում: Ս. բնորոշ է երկարատև, համառ ընթացքով:

ՍԻԿՈՒՆԻ, կղզի Ճապոն. կղզեխմբի հվ–ում: Տարածքը՝ 18,8 հզ. *կմ*^{2}: Բն.՝ 4.142,0 հզ. (2005): Բարձր.՝ մինչև 1982 *մ* (Իսիձուտի լ.): Ծածկված է մշտադալար, լայնատերև անտառներով: Գլխ. քաղաքները՝ Մացույամա, Տակամացու, Տոկուսիմա, Կոտի:

ՍԻԿՈՐՍԿԻ (Sikorsky) Իգնատ Իվանովիչ (1889–1972), ռուս. ավիակոնստրուկտոր և արդյունաբերող: 1908–ից կառուցել է ուղղաթիռներ և ինքնաթիռներ, աշխարհում 1–ին 4–շարժիչանի ինքնաթիռները: 1919–ից՝ ԱՄՆ–ում, որտեղ 1923–ին հիմնադրել է ռազմ., ուղևորատար ինքնաթիռներ և ուղղաթիռներ արտադրող ընկ.:

ՍԻԿՈՐՍԿԻ (Sikorzki) Վլադիսլավ (1881–1943), Լեհաստանի վարչապետ և ռազմ. նախարար՝ 1922–23–ին, լեհ. վտարանդի կառ–յան վարչապետ՝ 1939–43–ին, գեն.: Ստորագրել է (30.07.1941) ԽՍՀՄ–ի հետ դիվանագիտ. հարաբերությունների վերահաստատման պայմանագիր: Զոհվել է ավիավթարից:

ՍԻԿՏԻՎԿԱՐ, ք. (1780–1930–ը՝ Ուստ Սիսոլսկ), ՌԴ Կոմի Հանրապետության վարչ. կենտրոնը: Նվինգստ՝ Սիսոլա գետի ափին: Երկթեղ. կայարան է: Բն.՝ 233,0 հզ. (2009): Գործում են անտառարդ–յան խոշոր համալիրը (թղթի–թաղանթանյութի և ստվարաթղթի արտադր–յուն, փայտամշակման ձեռն–ներ), ՌԳԱ Կոմիի մասնաճյուղը, բուհեր (այդ թվում՝ համալսարան), 2 թատրոն, Գեղարվ–ի և Պատմաերկրագիտ. թանգարանները: Հայտնի է 1586–ից:

ՍԻԿՈՒԼՆԵՐ, հնագույն ցեղեր Միջին և Հվ. Իտալիայում ու Սիցիլիա կղզում (Ս–ի անունով է կոչվել կղզին):

ՍԻՉՈՒՈՎԿԱ, ք–նվինգստ Ճապոնիայում, համանուն պրեֆեկտուրայի վարչ. կենտրոնը Հոնսյու կղզում: Բն.՝ 716 հզ. (2010): Գղտ–յան շրջանների կենտրոն է (կանաչ թեյ, մանդարին ևն): Կա ձկնաբուծություն:

ՍԻՄԱ, (Oncorhynchus masou), սաղմոնաձկների ընտանիքի գաղթող ձուկ: Երկ.՝ մինչև 63 *սմ*, կ. զ.՝ մինչև 6 *կգ*: Ապրում է հեռավորարլ. ծովերի ափերին: Չուդ–պադրում է Ճապոնիայի և Կուրիլյան կղզիների, Պրիմորիեի, Սախալինի, Կամչատկայի գետերում: Արժեքավոր արդյունագործ. ձուկ է:

ՍԻՄԱ, ՅՅԱՆ (մ. թ. ա. մոտ 145–մոտ 87), չին պատմաբան: Հեղինակ է Չինաստանի պատմության վերաբերյալ աշխ–ների [«Շի ցզի» («Պատմական տեղեկագրեր»)]:

ՍԻՄԱՆՈՎՍԿԻ Նիկոլայ Պետրովիչ (1854–1922), քիթկոկորդականջաբանության հիմնադիրը և գիտ. դպրոցի ստեղծողը Ռուսաստանում: Աշխ–ները վերաբերում են վերին շնչուղիների ֆիզիոլոգիային, ախտաբանությանը, կոկորդի շարժող. ապարատի անատոմիային:

ՍԻՄԱՎՈՐՅԱՆ Պետրոս Սարգսի (1935–1992), ախտաբան–ֆիզիոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (1974), պրոֆ. (1986): Աշխ–ները վերաբերում են օրգանիզմի վրա քրոմի թունավոր ազդեցության ախտածնությանը, բարձրլեռն. պայմաններում օրգանիզմի սահման. վիճակի և վերակենդանացման օրինաչափություններին, ենթաստամոքս. գեղձի բորբոքումների առաջացման պատճառներին ու բուժմանը:

ՍԻՄԲԻՈԳԵՆԵԶ, վարկած՝ համակեցությունների հաջորդական շարքի հետևանքով որոշ ներբջջ. կառուցվածքների ծագման վերաբերյալ: Օր.՝ բջջում քլորոպլաստների ի հայտ գալը կապում են էնդոսիմբիոնտներում ցիանոբակտերիաների փոխակերպման հետ:

ՍԻՄԲԻՐՑԵՎ Վասիլի Նիկոլաևիչ (1901–1982), ռուս. ճարտ.: ԽՍՀՄ ժող. ճարտ. (1975): Հեղինակ է (Կարո *Հալաբյանի* հետ) Մոսկվայում Ռուսաստանի բանակի կենտր. թատրոնի շենքի նախագծի (1934–40): Վոլգոգրադի գլխ. ճարտ.՝ 1944–59–ին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ՍԻՄԵՆԹԱԼ, տավարի կաթնամսատու ցեղ: Ստացվել է Շվեյցարիայում: Յուլերի կ. զ.՝ 1000–1200 *կգ*, կովերինը՝ 600–700 *կգ*: Տարեկան միջին կաթնատվությունը՝ 3.500–4.000 *կգ* (լավագույնը՝ 5.000 *կգ*, ռեկորդ.՝ 14.430 *կգ*): ՀՀ ներմուծվել է XIX դ–ի կեսերին և ոչ մեծ գլխաքանակով բուծվում է առանձին գյուղաց. տնտ–յուններում:

ՍԻՄԵՆՈՆ (Simenon) Ժորժ (1903–1989), ֆրանսիացի գրող: Հեղինակ է ոստիկանության կոմիսար Մեգրեի մասին դեդեկտիվ–հոգեբ. վիպաշարի («Մեգրեի գրառումները», 1950, «Մեգրեն ճանապարհորդում է», 1958, «Մեգրեն տատանվում է», 1968, հայ.՝ «Մեգրեի ցասումը», 1984, ևն), «Ռիկո եղբայրներ» (1952), «Եվ ամեն դեպքում ընկուզենին կանաչում է» (1969) վեպերի, նաև «Ես թելադրում եմ» (հ. 1–21, 1975–81) ինքնակենսագր. երկի: Հայ. հրատարակվել են նաև «Մաժեստիկ հյուրանոցի նկուղներում» (1968), «Դեղին շունը» (1975) վեպերը, նաև վիպակների ու պատմվածքների ժող–ները:

ՍԻՄԵՆՍ (Siemens) Էռնստ Վեռներ (1816–1892), գերմանացի էլեկտրատեխնիկ և արդյունաբերող: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1882): «Սիմենս և Գալսկե», «Սիմենս Շուկերտ» էլեկտրատեխ. կոնցեռնների հիմնադիր և սեփականատեր: Ստեղծել է (1867) ինքնագրգռման էլեկտրամեք. գեներատոր:

ՍԻՄԵՆՍ, էլեկտրահաղորդականության միավոր ՄՄՀ–ում, նշանակվում է *Սմ*–ով: 1 *Սմ* = 1 *Օմ*$^{-1}$ դիմադրություն ունեցող հաղորդչի էլեկտրահաղորդականությանը: Կոչվել է Է. Վ. *Սիմենսի* պատվին:

«ՍԻՄԵՆՍ» (Siemens AG), գերմ. կոնցեռն, հիմնադրվել է 1847–ին: Արտադրում է էլեկտրատեխնիկայի, էլեկտրոնիկայի, էներգետիկ., տրանսպորտ., բժշկ. սարքավորումներ: Կենտրոնատեղիները՝ Բեռլինում և Մյունխենում (Գերմանիա):

ՍԻՄԵՈՆ (մոտ 864–927), Բուլղարիայի իշխան՝ 893–ից, թագավոր՝ 919–ից: Նրա օրոք առաջին Բուլղ. թագավորությունը հասել է տարածք. առավել ընդարձակման (Բյուզանդիայի դեմ պատերազմներում) և հզորության: Սկսվել է *բոգոմիլությունը*:

ՍԻՄԵՈՆ, XIII դ–ի վերջ–XIV դ–ի սկզբի մանրանկարիչ: Ապրել է Նախիջևանում: Հայտնի է 1304–ին պատկերազարդած և կազմած Ավետարանով (Մոնդ., ձեռ. № 3722): Արտակարգ հարուստ են ձեռագրի անվանաթերթերը և լուսանցազարդերը: Պատկերներն աչքի են ընկնում հեռատաքրքիր ձևերով, տպավորիչ լուսավոր գունաշարով:

ՍԻՄԵՈՆ II, **Սիմեոն Բորիսով Սաքսեն–Կոբուրգ–Գոթսկի** (ծ. 1937), Բուլղարիայի թագավոր՝ 1943–46–ին: Բուլղարիայի վարչապետ՝ 2001–05–ին, Ազգ. շարժման նախագահ և առաջնորդ:

ՍԻՄԵՈՆ Ա. ԵՐԵՎԱՆՑԻ (1710–1780), եկեղեց., քաղ. գործիչ, մանկավարժ, պատմագիր, տպագրիչ: Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1763–ից: Եղել է Էջմիածնի նվիրակ Կ. Պոլսում և Մադրասում: Քաղ. նկատառումներով դատապարտել է Հայաստանի ազատագրման Հովսեփ Էմինի ծրագիրը, Մադրասի խմբակի գործունեությունը: Էջմիածնի կաթողիկոսության իրավունքը Ռուսաստանի

հայկ. թեմի նկատմամբ վերականգնելու համար 1766–ի օգոստ. 1–ի կոնդակով դիմել է կայսրուհի Եկատերինա II–ին, որը 1768–ի հրովարտակով հաստատել է այն: Հիմնադրել է Էջմիածնի տպարանը և թղթի գործարանը (1776):

Հեղինակ է «Ջամբռ» (հրտ.՝ 1873, ռուս.՝ 1958) պատմագիտ., «Պարտավճառ» (1779) կրոնաբարոյական, նաև «Գիրք որ կոչի լուծումք արտաքնոց» (անտիպ) երկերի, «Յիշատակարանի» («Դիվան հայոց պատմության», հ. 8, մաս 2, 1908) և այլ գործերի, աղոթքների («Ջրօսարան հոգեւոր», 1772), տաղերի: Լրացրել, կարգավորել և հրատարակել է Հայ եկեղեցու «Տօնացոյցը» (հ. 1–2, 1774):

ՍԻՄԵՈՆ ԱՊԱՐԱՆԵՑԻ (1540–ական թթ.–1614), պատմագիր, բանաստեղծ, մանկավարժ: Մանուկ հասակում ծնողների հետ տեղափոխվել է Քաջբերունիքի Մեծոփի մենաստանը: Հոչակվել է րաբունապետ, եղել իր ժամանակի ամենանշանավոր մանկավարժներից: 1590–ին գրած «Վիպասանութիւն սակս Պահլաւունեանցն զարմի եւ Մամիկոնեանցն սեռի» պոեմում (հրտ.՝ 1870) Ղազար Փարպեցու, Մովսես Խորենացու, Սեբեոսի, Ղևոնդի և այլ պատմիչների երկերից (մոտ 20 աղբյուր) քաղած նյութի հիման վրա Ս. Ա. շարադրել է հայ նախնիների և հատկապես Պահլավունի ու Մամիկոնյան տոհմերի ազգանվեր գործերը: Հեղինակ է նաև «Ողբանք ի վերայ թախտին Տրդատայ...», «Ողբ ցավագին ի վերայ Մեծոփոյ...», «Ի վերայ առման Թաւրիզոյ...», «Պատմութիւն Ապարանից Սուրբ Նշանին» ողբերի, որտեղ հատկապես առկա է Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» երկի ազդեցությունը, կան նաև լավատեսության և հույսի տողեր, որոնք նորամուծություն են հայ դաս. ողբի ժանրում:

ՍԻՄԵՈՆ ԱՐՃԻՇԵՑԻ (ծ. թ. անհտ–1311), գրիչ, մանրանկարիչ: Վասպուրականի մանրանկարչության դպրոցի նոր փուլի սկզբնավորողներից: Հայտնի է նրա գրչագրած և պատկերազարդած ձեռագիր 6 Ավետարան, որոնցից 4–ը՝ Երևանի (ձեռ., № 2744, 4819, 4851, 4867), 1–ը՝ Երուսաղեմի (№ 1786), մյուսը Վենետիկի (Հ. Քյուրտյանի հավաքածու) մունդ–ներում են:

ՍԻՄԵՈՆ ԵՂՎԱՐԴԵՑԻ (ծ. թ. անհտ–1428), ուսուցչապետ, հոգևոր գործիչ, գրիչ: Աշակերտել է *Գրիգոր Տաթևացուն*: 1410–ական թթ–ին հիմնադրել և շուրջ 10 տարի ղեկավարել է Եղվարդի դպրոցը: Հայտնի են Տաթևում Գալուստ վրդ–ի հետ Ս. Ե–ու ընդօրինակած Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցը» և «Քաղուածոյ լուծմունք սաղմոսացը» (Մունդ., ձեռ. № 3955, 4411): Մեզ են հասել նաև Ս. Ե–ու պատվիրած մի շարք ձեռագրեր (Մունդ., ձեռ. № 1319, 3276, Վնտ. մունդ., ձեռ. № 402):

ՍԻՄԵՈՆ ԼԵՀԱՑԻ, Սիմեոն Ջամոսծացի (1584–1637), բանաստեղծ, մանկավարժ, եկեղեց. գործիչ: 1608–19–ին ճանապարհորդել է Եվրոպայի, Մերձ. Արևելքի, Հս. Աֆրիկայի երկրներում, այցելել Հայաստան: «Ուղեգրութիւնը» շարադրվել է 1619–25–ին: Տեղեկություններ է հաղորդել հայկ. գաղթավայրերի, Հայաստանի քաղ., սոցիալ–տնտ., մշակութ. կյանքի մասին, անդրադարձել է հայ եկեղեցու պատմությանը, նկարագրել է այցելած եկեղեցիներն ու վանքերը, պատմել թուրք. իշխանությունների կամայականությունների մասին, ներկայացրել է նաև 1623–35–ին Լեհաստանում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները, մեծ տեղ հատկացրել լեհահայ համայնքին: «Վիպասանութիւն Նիկոլական» (1634, հրտ.՝ 1896, Ղ. Ալիշանի «Կամենից: Տարեգիրք հայոց...» ժող–ում) երգիծ. պոեմում անդրադարձել է Լեհաստանի հայկ. համայնքի հոգևոր առաջնորդ Նիկոլ Թորոսովիչի շահատակություններին: Հեղինակ է պանդխտության թեմայով երգերի: Պատմ. արժեք ունեն նաև Ս. Լ–ու հիշատակարանները:

ՍԻՄԵՈՆ ԿԱՖԱՑԻ, Կաֆայեցի (1620–ական թթ.–մ. թ. անհտ), տաղերգու: Հեղինակ է Մարիամ Աստվածածնին ձոնված տաղի և ապաշխարության տաղերի: Ուշագրավ են նրա «Էանց ցուրտ ձմեռն եւ վիշտն աշխարհի» և «Եկ պիւլպիւլ իմ գարնանային» սկսվածքներով տաղերը, որտեղ զուգորդվում են սիրո ու բնության մոտիվները:

ՍԻՄԵՈՆ ՋՈՒՂԱՑԵՑԻ (XVI դ–ի վերջ–1657), փիլ., տրամաբան, քերական և հաս. գործիչ: Քննել է ունիվերսալիաների հարցը, ցուցաբերել հայեցակարգ. դիրքորոշում: Ս. Ջ–ու տրամաբ. ուսմունքը շարադրված է «Գիրք տրամաբանութեան» (հրտ.՝ 1728) երկում, որը XVIII դ–ի կեսին վրաց. է թարգմանվել «Դիալեկտիկա» վերնագրով: Ս. Ջ. դրել է նոր շրջանի փիլ–յան զարգացման սկիզբը: Նրա առանձին մտքեր դեռևս XVII դ–ում իր գաղ. հակառակորդ Կղեմես Գալանոսի միջոցով հայտնի են դարձել լատինալեզու ընթերցողներին:

ՍԻՄԵՈՆ ՌՇՏՈՒՆԵՑԻ (1317–մ. թ. անհտ), ուսուցչապետ, հոգևոր գործիչ, գրիչ: Հերմոնի վանքի դպրոցում աշակերտել է Գրիգոր Բարունապետին և *Մարգիս Ապրակունեցուն*: Եղել է Սիկաց սարի Սբ Գևորգ վանքի դպրոցի ուսուցչապետը: Մեզ են հասել Ս. Ռ–ու «Լուծմունք սուրբ գրոց Վարդանայ Արեւելցւոյ» (Մտնդ., ձեռ. № 341), «Դաւթի լուծմունք ճառից Աստուածաբանի» (Վնն. մտնդ., ձեռ. № 317), «Մեկնութիւն թղթոց Պօղոսի» (Երուսաղեմի մտնդ., ձեռ. № 345) ձեռագրերը:

ՍԻՄԵՈՆ ՍՅՈՒՆԱՑԻ (մոտ 390–459), քրիստ. վանական, ճգնավոր, սուրբ: Ավելի քան 40 տարի ճգնել է Անտիոքի մերձակայքում՝ կանգնելով հրապարակում կառուցված սյան (աշտարակ) վրա՝ աղոթելով և քարոզելով:

ՍԻՄԵՈՆ ՏԻՏՈՍ (ծ. թ. անհտ–690), Պավլիկյան շարժման բյուզանդացի առաջնորդ՝ 687–ից: Ուղարկվել է Փոքր Ասիա՝ ճնշելու Կոստանդին Սիլվանի գլխավորած Պավլիկ. շարժումը: Շարժման կենտրոնը՝ Կիբոսսան (Փոքր Հայք), գրավելուց և Կոստանդին Սիլվանին սպանելուց հետո Ս. Տ. հաղորդակցվել է պավլիկյանների գաղափարներին, հարել շարժմանը և 3 տարի ղեկավարել Կիբոսսայի պավլիկ. համայնքը: Կոլոնիայի եպս–ի ամբաստանությամբ ձերբակալել են և իր աշակերտների հետ ողջակիզել:

ՍԻՄԵՈՆՅԱՆ (Սիմեոնյանց, Սիմոնյան) Պետրոս (1830–1911), հաս. գործիչ, խմբ., մանկավարժ: 1863–86–ին՝ *«Մեղու Հայաստանի»* թերթի, 1887–91–ին՝ Մայր աթոռի *«Արարատ»* հանդեսի խմբ.: 1890–ական թթ–ի 1–ին կեսին՝ *Մկրտիչ Ա. Վանեցու* քարտուղարը: Հեղինակ է «Դասագիրք ընդհանուր պատմութեան» (հ. 1, 1867), «Դասագիրք միջին դարերի պատմութեան» (1867), «Յուշամատեան: Հայկական Զմիւռնիան» (1936) գրքերի:

ՍԻՄԻՈՆԱՏՈ (Simionato) Ջուլիետտա (1910–2010), իտալացի երգչուհի (մեցցո–սոպրանո): Միլանի «Լա Սկալա», Լոնդոնի «Քովենտ Գարդեն», Նյու Յորքի «Մետրոպոլիտեն–օպերա» և այլ նշանավոր օպեր. թատրոնների մեներգչուհի: Ջ. Ռոսսինիի և Ջ. Վերդիի օպեր. դերերգերի լավագույն մեկնաբաններից է:

ՍԻՄԻՍԻՄ Կոնստանտինոս (Կոստաս, ծ. 1936), Հունաստանի վարչապետ՝ 1996–2004–ին: «Համահունաստանյան սոցիալիստական շարժում» կուս–յան հիմնադիրներից (1974, 1996–2004–ին՝ նախագահ):

ՍԻՄԼԱ, Շիմլա, ք. Հս. Հնդկաստանում, Հիմաչալ–Պրադեշ նահանգի վարչ. կենտրոնը: Բն.՝ 218,2 հզ. (2010): Լ–կլիմ. առողջարան է Հիմալայների նախալեռներում՝ 2000 *մ* բարձր–յան վրա:

ՍԻՄՅԱՆ Տիգրան Սերժիկի (ծ. 1980), գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (2015), պրոֆ. (2016): Հեղինակ է «1918–1939 թթ. գերմանական վեպի գաղափարագեղարվեստական պրոբլեմատիկան» (2016) աշխ–յան:

ՍԻՄՈՆԱՅԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 1855, առաջին պայմանագիրը Ռուսաստանի և Ճապոնիայի միջև: Ստորագրվել է Ճապոնիայի Սիմոդա (Շիմոդա) ք–ում: Հաստատվել է ռուս–ճապոն. սահմանը. Կուրիլյան կղզիները՝ Ուրուպ կղզուց հս ճանաչվել են ռուս., Սախալին կղզին՝ դեռևս «չբաժանված» 2 պետությունների միջև: Ռուս. նավերի համար բացվել են ճապոն. Սիմոդա, Հակոդատե նվինգատները: Նախատեսվել է Ճապոնիայում բացել Ռուսաստանի դեսպանատուն: Վավերացվել է 1858–ին՝ ճապոն. էդո ք–ում կնքված պայմանագրով:

ՍԻՄՈՄՈՒՐԱ (Shimomura) Օսամու (ծ. 1928), ճապոնացի քիմիկոս–կենսաբան: 1960–ից՝ ԱՄՆ–ում: Խաղաղօվկիանոս. մեդուզայից անջատել է ֆլուորեսցենտող էկվորեն սպիտակուցը, բացահայտել, որ ԵՄ լույսով լուսավորելիս լուսավորվում է կանաչ գույնով: Այդ սպիտակուցն օգտագործվել է որպես նշան կենսբ. հետազոտություններում: Նորելյան մրց. (2008, Ռ. *Յանի* և Մ. *Չալֆիի* հետ):

ՍԻՄՈՆ (Simon) Կլոդ (1913–2005), ֆրանսիացի գրող: Հեղինակ է «Ֆլանդրիայի ճանապարհը» (1960), «Պատմություն» (1967), «Ֆարսալի ճակատամարտը» (1969), «Ուղեկցորդներ» (1971), «Դեորգիկներ» (1981), «Բուսաբանական այգի» (1997), «Տրամվայ» (2001) և այլ վեպերի: Ս–ի արձակին բնորոշ է իրադարձ. և զգացմունք. պատմությունների զուգորդումը: Հայ. հրատարակվել է «Ակացիան» (2014) վեպը: Նորելյան մրց. (1985):

ՍԻՄՈՆ ԾԵՐՈՒՆԻ, ծերունի Նոր կտակարանում, որը գրկել է մանուկ Հիսուսին, երբ նրան Երուսաղեմի տաճար էին բերել ծնողները: Աստված նախազգուշացրել էր Ս. ծ–ուն, որ նա չի մեռնի մինչև չտեսնի *Մեսիային* (Քրիստոսին): Հիսուսին ձոնված Ս. ծ–ու փառաբանող. երգը ներառվել է քրիստ. ժամասացության մեջ: Ի դեմս Ս. ծ–ու՝ Աստծու հետ մարդկության հանդիպման հիշողություններն ընկած են Տյառնընդառաջի քրիստ. տոնի հիմքում: Համաձայն որոշ պարականոն տեքստերի՝ Ս. ծ. 72 թարգմանիչներից էր:

ՍԻՄՈՆԴՅԱՆ ՀԻՎԱՆԴԱԽՏՅՈՒՆ (նկարագրել է գերմանացի բժիշկ Մ. Սիմոնդսը 1914–ին), **հիպոֆիզային ծյուրախտ**, ներ–

զատ. հիվանդություն, պայմանավորված է հիպոֆիզի առաջային բլթի և ենթատեսաթմբի ախտահարմամբ: Բնորոշվում է սեռ. և այլ օրգանների հետաճումով, նյութափոխանակության խանգարմամբ և նիհարումով:

ՍԻՄՈՆՅԱՆ Աբել Պողոսի (1922–1994), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1969), պրոֆ. (1972): Գառնիկ ***Սիմոնյանի*** եղբայրը: 1966–74-ին՝ Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբ–ի տեղակալ, 1974–79-ին՝ գլխ. խմբ.: Աշխ–ները վերաբերում են հայ ժողղ–ի պատմության նոր ժամանակաշրջանի խնդիրներին:

ՍԻՄՈՆՅԱՆ Աշոտ Ասքանազի (ծ. 1948), ջրակենսաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1988): Աշխ–ները վերաբերում են կենսբ–յանը, ջր. կենդանիների էկոլոգիային, ջրակենսբ–յանը, հիդրոէկոհամակարգերի զարգացման կանխատեսման հարցերին: Ուսումնասիրել է Սևանի լճի ջրիմուռների գործունեության օրինաչափությունները:

ՍԻՄՈՆՅԱՆ Ասյա (Հերիքնազ) Հովհաննեսի (1925–1989), դերասանուհի: Ադրբ. ԽՍՀ վաստ. արտիստ (1973): 1961–77-ին՝ Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվ., 1978–89-ին՝ Կիրովականի Հ. Աբելյանի անվ. դրամատիկ. թատրոնների դերասանուհի (Բեատրիչե՝ Կ. Գոլդոնիի «Վենետիկյան երկվորյակներ», Կորինկինա՝ Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», Ռուզան՝ Մուրացանի «Ռուզան», Տիկին Տրոդվուտ՝ Զ. Դիքենսի «Դավիթ Կոպերֆիլդ», Զավահիր, Սանամ՝ Շիրվանզադեի «Չար ոգի», «Նամուս», Էփեմիա՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», ևն):

ՍԻՄՈՆՅԱՆ Արամ Հրաչիկի (ծ. 1955), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (2000), պրոֆ. (2001): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006): Հրաչիկ ***Սիմոնյանի*** որդին: ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2014): 2006–ից՝ ԵՊՀ ռեկտոր: Աշխ–ները վերաբերում են Այսրկովկասի և մասնավորապես՝ հայոց պատմության XIX դ–ի վերջի և XX դ–ի 1–ին 2 տասնամյակի պատմությանը («Զանգեզուրի գոյամարտը 1920–1921 թթ.», 2000, «Զանգեզուրի հերոսամարտը 1917–1920 թթ.», 2009, «Վայոց ձորը 20–րդ դարի քառուղիներում 1914–1921 թթ.», 2011, «Զանգեզուրի գոյապայքարը 1917–1920 թթ.», 2017, ևն): ՀՀ «Մովսես Խորենացի» (2009), ՊՆ «Գարեգին Նժդեհ» (2001) մեդալներ:

ՍԻՄՈՆՅԱՆ Արամ Սիմոնի (1927–2007), խմբ., գեղագետ: Փիլ. գիտ. թեկնածու (1954): Արմինե ***Սիմոնյանի*** հայրը: 1976–1986-ին՝ «Լենինյան ուղիով» (1990-ին՝ «Հայացք») ամսագրի գլխ. խմբ–ի տեղակալ, 1986–90-ին՝ գլխ. խմբ.: Հեղինակ է «Արվեստի սոցիալական և ազգային բնույթը» (1982), «Պահանջմունքների էսթետիկան» (1983), «Սովետական երիտասարդի բարոյական կերպարը» (1985) աշխ–ների:

ՍԻՄՈՆՅԱՆ Արեգ Միքայելի (ծ. 1939), մեխանիկոս: Տեխ. գիտ. դ–ր (1988), պրոֆ.: Աշխ–ները վերաբերում են մետաղների, միաբյուրեղների, բաղադրյալ նյութերի սողքի տեսությանը և դրանց կիրառմանը: Աշակել է միաբյուրեղ. կառուցվածքների բյուրեղ. առանցքների լավարկային ուղղվածության ընտրության մեթոդ: ՀՏԱ անդամ (2000), գլխ. գիտ. քարտուղար:

ՍԻՄՈՆՅԱՆ Արմեն Արշալույսի (ծ. 1932), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դ–ր (1973), պրոֆ. (1974): Մաքսիմ ***Սիմոնյանի*** եղբայրը: Աշխ–ները վերաբերում են սաղմն. զարգացման ընթացքում նյարդ. հյուսվածքում կենսաէներգետիկ. մեխանիզմների օնտոգենետիկ. և ֆիլոգենետիկ. փոփոխություններին: Համահեղինակ է ռուս–հայ. կենսաքիմ. (1997) և ռուս–անգլ–հայ. կենսբ. (1998) բացատր. բառարանների:

Ուղեղի ուսումնասիրության միջազգ. կազմ–յան (1995–ից), Կենսաքիմիկոսների եվրոպ. ընկ–յան (1970–ից), ՌԴ էկոլոգ. ակադ–ի (1996–ից) անդամ:

ՍԻՄՈՆՅԱՆ Արմինե Արամի (ծ. 1959), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ–ր (2011), պրոֆ. (2016): Արամ ***Սիմոնյանի*** դուստրը: Հեղինակ է «Քաղաքական խոսույթի տեսության գործաբանական և ճանաչողական հայեցակարգերը» (2011) աշխ–յան:

ՍԻՄՈՆՅԱՆ Արսեն Տիգրանի (1907–1979), թերապևտ: Բժշկ. գիտ. դ–ր (1952), պրոֆ. (1952): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): Աշխ–ները վերաբերում են երկրամաս. ախտաբանության, սիրտանոթ. համակարգի, լյարդի հիվանդությունների կլինիկայի և բուժման, նյութափոխանակության խանգարումների, պարբեր. հիվանդության, հանք. ջրերի, տարբեր բաղադրության դեղամիջոցների բուժիչ ազդեցության հարցերին: ՀԽՍՀ թերապևտների գիտ. ընկ–յան նախագահ (1965–75):

ՍԻՄՈՆՅԱՆ Բարկեն Ավետիսի (ծ. 1952), բանասեր, թարգմանիչ, սերբագետ: 2006–14-ին՝ ՀՀ–ում Սերբիայի Հանրապետության պատվո հյուպատոս: Հեղինակ է «Հայրենիքի բույրը» (սերբ., 1994), «Ուխտագնացություն» (1997), «Նախնյաց երկիր» (2002), «Արտամետ» (հայ., սերբ., 2010) բանաստեղծությունների, «Բալկանյան կրակների միջով» (սերբ., 1994), «Արարատից մինչև Կոսովո» (հայ. և սերբ., 2000), «Խաչքար» (2012), բանաստեղծությունների, «Մի պտղունց սերբական հող» (2017, սերբ.) էսսեների և ուղեգրությունների ժող–ների, «Պատկերներ Լիբանանից» ուղեգրության: Սերբ. է թարգմանել Հ. Թումանյանի, հայ մանկագիրների, հայ՝ Դ. Մաքսիմովիչի գործերից:

Սերբիայի «Սբ Սավա» (1994), ՀԱԵ «Կանթեղ» (2010), «Բրանկո Ռադիչևիչ» միջազգ. (2012) գր. մրց–ներ, ՀՀ ՄՆ (2012), Սերբիայի նախագահի (2015) ոսկե մեդալներ:

ՍԻՄՈՆՅԱՆ Գառնիկ Պողոսի (1932–2007), երկրաբան: Երկրբ–ինքբ. գիտ. դ–ր (1990), պրոֆ. (1991): Աբել ***Սիմոնյանի*** եղբայրը: Աշխ–ները վերաբերում են ՀՀ, Փոքր Կովկասի երկրբ. կառուցվածքի, տեկտոնիկայի, սեյսմաշրջանացման հարցերին: Հեղինակ է ՀՀ սեյսմոտեկտոնիկայի (ռուս., 1981), 4–րդ. (ռուս., 1993) և նորագույն (2000) տեկտոնիկայի քարտեզների, համահեղ.՝ Կովկասի (1974), ԽՍՀՄ (1975), ՀԽՍՀ (1988) տեկտ. (բոլորը՝ ռուս.), ԽՍՀՄ (1981), ՀՀ (1995) սեյսմաշրջանացման քարտեզների:

ՍԻՄՈՆՅԱՆ Գարեգին Հարությունի (1904–1984), փիլ.: Փիլ. գիտ. դ–ր (1963), պրոֆ. (1965): Աշխ–ները վերաբերում են մտավոր և ֆիզ. աշխ–ի փոխհարաբերության, անձի բազմակողմանի զարգացման հիմնախնդիրներին:

ՍԻՄՈՆՅԱՆ Գրիգոր Տիգրանի (1905–1981), բժիշկ, ծանրորդ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1943): ՀԽՍՀ վաստ. բժիշկ (1943), միջազգ. կարգի մրցավար (1965): ՀԽՍՀ սպորտկոմիտեի նախագահ (1947–49 և 1954–56):

ՍԻՄՈՆՅԱՆ Զինաիդա Ստեփանի (1950–2012), հրաձգուհի: ԽՍՀՄ ս. վ. վ. (1975): Աշխարհի քառակի (1974, 1976,1980, 1981), Եվրոպայի 10–ակի (1973–83), Եվրոպայի եռակի բացարձակ (1975, 1976, 1979), ԽՍՀՄ բազմակի (1967–85) չեմպիոնուհի:

ՍԻՄՈՆՅԱՆ Խաչատուր Մկրտչի (ծ. 1927), անասնաբույծ–ընտրասերումնաբան: Անասնաբուծ. գիտ. դ–ր (1988): Աշխ–ները վերաբերում են ՀՀ–ում բուծվող տավարի կովկաս. գորշ ցեղի մթերատու և տոհմ. հատկությունների բարելավման ու կատարելագործման խնդիրներին: Կովկաս. տավարի գորշ ցեղի ստեղծման համահեղինակներից է:

ՍԻՄՈՆՅԱՆ Կարապետ Սիմոնի (1918–1983), մայոր: ԽՄ հերոս (1940): 1939–40-ին մասնակցել է Խորհրդա–ֆինն. պատերազմին: Եղել է տանկի հրաձիգ–ռադիստ: Հերոսի կոչման արժանացել է Մանններհայմի գծի ամրությունների ճեղքման ժամանակ ցուցաբերած խիզախության և արիության համար: ՀՄՊ–ի ժամանակ կռվել է Հս. Կովկասում, ապա ծառայել հրամ. կադրեր պատրաստող զորամասերից մեկում:

ՍԻՄՈՆՅԱՆ Կարեն Արամի (ծ. 1936), արձակագիր, խմբ.: 1975–82-ին՝ ***«Լիտերատուրնայա Արմենիա»*** ամսագրի խմբ., 1982–89-ին՝ ***«Սովետական Հայաստան»*** ամսագրի գլխ. խմբ–ի տեղակալ, ապա՝ գլխ. խմբ., 1989–91-ին՝ Սամուլի կոմիտեի նախագահ: 1992–ից՝ Փարիզում: Հեղինակ է «Մարսեցիները» (1957), «Մեդուզայի շոշափուկներում» (1958) գիտաֆանտաստիկ, «Ժպիտը» (1964), «Մարգագետին» (1967), «Մոգական պատմություն» (1980) մանկապատանեկան պատմվածքների ժող–ների, «Կապարե մարդկանց գաղտնիքը» (1959), «Սիցիլիական պաշտպանությունը» (1965), «Ներսես Մաժան դեղազործը» (1974) վեպերի, «Ցտեսություն Նաթանայել» (1975, կինոնկար՝ «Մենք դեռ կհանդիպենք», 1984) վիպակի, «Քարանձավային պատմություններ կամ 1993» (1996) պատմվածաշարի, «Միքայել Նալբանդյան» (ռուս., 1984), «Վարք Աբովյան Խաչատուրի» (2002) վարքագրությունների: Թարգմանել է Ջ. Լոնդոնի, Ջ. Սթայնբեքի, Դ. Բիսեթի, Ջ. Սելինջերի և ուր. երկերից:

ՍԻՄՈՆՅԱՆ Կոնստանտին Սիմոնի (ծ. 1945), երգիչ (բարիտոն): ՀՀ վաստ. արտիստ (2003): 1968–85-ին՝ ԵՕԲԹ երգչախմբի երգիչ, 1985-ից՝ մենակատար (Արշակ՝ Տ. Չուխաճյանի «Արշակ Բ», Թաթուլ՝ Ա. Սպենդիարյանի «Ալմաստ», Սոսի՝ Ա. Տիգրանյանի «Անուշ», Օնեգին՝ Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», ևն):

ՀԼԿԵՄ (1972), ՀԹԳՄ (1975, 1989), ԽՍՀՄ ՄՆ Հատուկ (1989) և այլ մրց–ներ:

ՍԻՄՈՆՅԱՆ Կորյուն Ստեփանի (1912–1943), նկարիչ: Հեղինակ է բնանկարների, դիմանկարների, թեմատիկ պատկերների («Ինքնանկար», «Արարատ», երկուսն էլ՝ 1940, «Յուսոփի սպանությունը», 1938–40, ևն):

ՍԻՄՈՆՅԱՆ Հասմիկ Արշալույսի (1941–2001), բանասեր, բնագրագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1992), պրոֆ. (1994): Հեղինակ է «Հայ միջնադարյան կաֆաներ (X–XV դդ.)» (1975), «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ. հայկական խմբագրություններ» (1989), «Հայկական առաջին թարգմանությունը և Մովսես Խորենացին» (անգլ.՝ 1991) և այլ աշխ–ների:

ՍԻՄՈՆՅԱՆ Հոիփսիմե Լևոնի (1916–1998), քանդ–խեցեգործ: ՀՀ ժող. նկարիչ

(1974): Պրոֆ. (1977): Արծվին *Գրիգորյանի* մայրը: Հեղինակ է հախճապակե և խեցե մանրաքանդակների («Հայկական պարեր», 1946, ևն), անոթների («Ընկերուհիներ», 1962, «Գորիս», 1965), հրակավե մեծ դեկորատիվ քանդակների («Արևիկ», «Կարինցի աղջիկը», 1975–76), գրաֆիկ. գործերի (գծանկար, ջրանկար):

ՍԻՄՈՆՅԱՆ Հրայր Գևորգի (1919–2000), գեն–մայոր (1963): Ռազմ. գիտ. դ–ր (1968), պրոֆ. (1970): ՌԴ ռազմ. ԳԱ ակադ. (1996): ՀՄՊ–ի ժամանակ եղել է 1–ին Բելառուս. ռազմաճակատի 8–րդ բանակի շտաբի պետի տեղակալ, մասնակցել է Կուրսկի ճակատամարտին, Բելառուսի ազատագրմանը, Բեռլինի գրավմանը: 1945–47–ին ծառայել է Գերմանիայում՝ խորհրդ. զորախմբավորման, 1947–60–ին՝ տարբեր ռազմ. օկրուգների շտաբներում: 1960–83–ին՝ Մ. Ֆրունզեի անվ. ռազմ. ակադ–ի ամբիոնի պետ: Զորացրվել է 1983–ին: Հեղինակ է գիտ. հետախուզությանը վերաբերող ավելի քան 200 աշխ–ների:

ԽՍՀՄ Կարմիր դրոշի (2), ՀՄՊ 1–ին և 2–րդ աստիճանների, Կարմիր աստղի (2), Լ/Ժ շքանշաններ:

ՍԻՄՈՆՅԱՆ Հրանտ Հայկազի (ծ. 1928), անասնաբույժ: Անասնաբուժ. գիտ. դ–ր (1976), պրոֆ. (1984): ՌԴ գիտ. վաստ. գործիչ (2002): Մշակել է խեկ–ների լեյկոզի ախտորոշման (նաև բուժման) արյունաբան. եղանակ, բացահայտել արյան չարորակ նորագոյացությունների տարբեր փուլերի և ձևերի ժամանակ արյունաստեղծ օրգաններում բջջաձևաբան. փոփոխությունները: ՌԲՆԳԱ անդամ: Կենսագրությունն ընդգրկված է «Ռուսաստանի լավագույն մարդիկ» (2003) հանրագիտարանում:

ՍԻՄՈՆՅԱՆ Հրաչիկ Ռուբենի (1928–2016), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1970), պրոֆ. (1971): ՀՀ ԳԱԱ ակադ. (1986): Արամ Հ. *Սիմոնյանի* հայրը: 1977–90–ին՝ ՄԼԻ հայկ. մասնաճյուղի տնօրեն: 1990–91–ին՝ ԳԱԱ պատմության և տնտեսագիտ–յան բաժանմունքի ակադ. քարտուղար, 1991–94–ին՝ Սփյուռքահայության հետ մշակութ. կապի կոմիտեի նախագահ: Հեղինակ է «Սփյուռքահայությունը սոցիալ–քաղաքական պայքարի ուղիներում» (1968), «Արդի բուրժուական գաղափարախոսության քննադատական ուրվագծեր» (գիրք 1, 2, 1977, 1980), «Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը» (1986), «Թուրք–հայկական հարաբերությունների պատմությունից» (1991), «Անդրանիկի ժամանակը» (գիրք 1–2, 1996), «Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ)» (2009, անգլ.՝ 2012), «Ազատագրական պայքարի ուղիներում» (գիրք I–V, 2003–13, Պետ. մրց.՝ 2013), «1912–1913 թթ. Բալկանյան պատերազմները և հայերը» (2014) և այլ աշխ–ների:

ՍԻՄՈՆՅԱՆ Սանվել Մակիչի (1927–1997), գյուղատնտես: Գղտ. գիտ. դ–ր (1977), պրոֆ. (1981): Աշխ–ները վերաբերում են մշակաբույսերի բերքատվության բարձրացման ագրոտեխ. միջոցառումների, լեռն. և արևադարձ. երկրագործության պայմաններում նրանց աճեցման, հողերի արդյունավետ օգտագործման խնդիրներին:

ՍԻՄՈՆՅԱՆ Մարիա Նազարի (1919–1990), դերասանուհի: ՀԽՍՀ ժող. արտիստ (1967): 1926–27–ին՝ Բաքվի հայկ. թատրոնի, 1940–ից՝ ԵՊՀԹ դերասանուհի (Զարուհի՝ Շիրվանզադեի «Պատվի համար», Կրուչինինա՝ Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», Սալոմե՝ Գ. Սունդուկյանի «Էլի մեկ զոհ», Հելենա՝ Վ. Շեքսպիրի «Ամառային գիշերվա երազը», ևն): Նկարահանվել է կինոյում («Հուսո աստղ», 1978, «Տերը», 1983, երկուսն էլ՝ Հայֆիլմ):

ՍԻՄՈՆՅԱՆ Մաքսիմ Արշալույսի (ծ. 1940), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դ–ր (1996): Արմենն *Սիմոնյանի* եղբայրը: Աշխ–ները վերաբերում են ակտիվ թթվածնի նյութափոխանակության խնդիրներին: Ուղեղի հետազոտության միջազգ. կազմ–յան անդամ (1994–ից):

ՍԻՄՈՆՅԱՆ Մետաքսյա Միհրանի (1926–1987), դերասանուհի: ՀԽՍՀ (1965), ԽՍՀՄ (1981) ժող. արտիստ: Պրոֆ. (1983): 1948–ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասանուհի: Հաջողությամբ հանդես է եկել հայ, ռուս, արևմտաեվրոպ. հեղինակների պիեսներում (Սուսան՝ Շիրվանզադեի «Նամուս», Նինա՝ Մ. Յ. Լերմոնտովի «Դիմակահանդես», Նուարդ՝ Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ», Կատրին Լեֆևր՝ Սարդուի և Մորոյի «Մադամ Սան Ժեն», ևն): Նկարահանվել է կինոյում («Անահիտ», 1947, «Խաթաբալա», 1971, «Հուսո աստղ», 1978, ևն, երեքն էլ՝ Հայֆիլմ, «Սայաթ–Նովա», 1960, հեռուստաֆիլմ): Հանդես է եկել նաև ասմունքով:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

ՍԻՄՈՆՅԱՆ Նարինե Ժորայի (ծ. 1961), երգեհոնահար: Նվագել է Յյուրիխի Սբ Մագթաղինե, Բեռնի Մեծ, Փարիզի Աստվածամոր տաճարներում, Գյումրիի Սբ Աստվածածին (Յոթ վերք, 1997, 2001) և այլ եկեղեցիներում: Երգեհոնահարների «Մենդելսոն–Լիստ–Մորե» միջազգ. (Մեծ մրց., 1994, Շվեյցարիա), «Իլ դը Ֆրանս» ազգ. (1–ին մրց., 1995, Փարիզ) մրցույթների դափնեկիր, Բարձրագույն վարպետության վիրտուոզ կատարողի դիպլոմ (1996, Փարիզ):

ՍԻՄՈՆՅԱՆ Նիկիտա (Մկրտիչ) Պողոսի (ծ. 1926), ֆուտբոլիստ, մարզիչ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1954), վ. մ. (1970), ՀՀ ս. վ. վ. (1973): ԽՍՀՄ քառակի (1952, 1953, 1956, 1958), օլիմպ. խաղերի (1956) չեմպիոն: 1960–ից՝ մարզիչ (1973–74 և 1984–85–ին՝ Երևանի «Արարատ»–ի, 1973–ին՝ ԽՍՀՄ չեմպիոն և գավաթակիր, 1977–79–ին՝ ԽՍՀՄ հավաքականի): ՌԴ ֆուտբոլային միության փոխնախագահ (1992–ից):

ՖԻՖԱ–ի (2000), ՀՀ «Սովսես Խորենացի» (2002), ՈՒԵՖԱ–ի սուտակե (2006) մեդալներ, ՄՕԿ–ի օլիմպ., ՖԻՖԱ–ի «Վաստակի համար», ԽՍՀՄ Կարմիր աստղի, «Պատվո նշան», Աշխ. արիության, ՌԴ Բարեկամության, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 4–րդ և 3–րդ աստիճանների շքանշաններ:

Երևանի պատվ. քաղաքացի (2002):

ՍԻՄՈՆՅԱՆ Նորայր Համայակի (1909–1988), կինոօպերատոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1962): 1935–ից՝ Հայֆիլմի ռեժ.: Նկարահանել է վավերագր. («Խնդության երկիր», 1940, «Պայքար հացի համար», 1951, «Մարտիրոս Սարյան», 1961, «Ալեքսանդր Շիրվանզադե», 1975, ևն) և գեղ. («Մանրուք», 1954, «01–99», 1959) ֆիլմեր:

ՍԻՄՈՆՅԱՆ Շավարշ Ստեփանի (1912–1974), պետ. գործիչ, մանկավարժ, հոգեբան: ԽՍՀՄ ՄԳԱ թղթ. անդամ (1967): 1955–72–ին՝ ՀԽՍՀ լուսավորության նախարար, 1972–74–ին՝ Մանկավարժ. ԳՀԻ տնօրեն: Հեղինակ է «Սովետական Հայաստանի ժողովրդական կրթության նվաճումները 40 տարում» (1961), «Դպրոցը նոր խնդիրների առաջ» (1969), «Հոգեբանություն. մի քանի հարցեր» (1980) և այլ աշխ–ների:

ՍԻՄՈՆՅԱՆ Պեպո Տիգրանի, *Գալայճյան* **Պետրոս** (1937–2015), գրող, հրապարակախոս, խմբ.: 1956–65–ին՝ *«Արարատ գրական»* գր. ամսագրի խմբ.: Հեղինակ է «Մարդեղութիւն» (1981), «Ծառին ճիչը» (1991), «Միջերկրականի լոյսերուն դիմաց» (2004) բանաստեղծությունների, «Հեքիաթ Հայաստանի մասին» (1979), «Ծուէն, ծուէն երիզներ» (1980), «Մայրիներու արմատները» (1986), «Ակնթարթներ մարդու եւ կեանքի առօրեայէն» (2012) արձակ գործերի ժող–ների, «Արուեստագէտը Թլկատինցի» (1982), «Էջեր եւ նիւթեր իրականութեան» (2007) գրականագիտ., «Հայակերտում եւ մանկավարժութիւն» (1996) և այլ աշխ–ների:

ՍԻՄՈՆՅԱՆ Սարգիս Հովհաննեսի (ծ. 1946), հաշվող. տեխնիկայի, ԱԿՀ բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1993), պրոֆ. (1996): ՀՃԱ ակադ. (2003): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2011): Աշխ–ները վերաբերում են ոչ գծային ծրագրավորման դինամիկ խնդիրների լուծման եղանակներին, մասնագիտացված հաշվիչների սինթեզին, վերջավոր խնդիրներում դիֆերենցիալ ձևափոխությունների տեսությանը և կիրառությանը: ՀՃԱ «Պատվո նշան» (2) շքանշան, ՀՊՃՀ ոսկե մեդալ:

ՍԻՄՈՆՅԱՆ Սեդա Արշավիրի (1929–2001), սնկաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1976): Առաջինն է բացահայտել մանրադիտակ. սնկերի բուսահամակեցութային նշանակությունը: Մշակել է Zeveillula ցեղի նոր համակարգ և նկարագրել նոր տեսակներ: Միկոֆլորիստիկ. հետազոտությունների արդյունքները բույսերի հիվանդությունների կանխարգելման և բույսերի պաշտպ–յան մի շարք խնդիրների լուծման հնարավորություն են տվել:

ՍԻՄՈՆՅԱՆ Սիմոն Օվեի (1914–1986), գրող, խմբ., հրտ.: 1935–60–ին դասավանդել է Հալեպի և Բեյրութի վարժարաններում: 1947–55–ին՝ *«Հասկ»* թերթի, 1958–75–ին՝ *«Սփիւռք»* շաբաթաթերթի խմբ.: 1955–ին Բեյրութում հիմնադրել է *«Սևան»* տպարանը և նույնանուն հրտչ–յունը: Հեղինակ է «Կը խնդրուի... խաչաձեւել: Հայոց երգիծական պատմութիւն» (1965), «Խմբապետ Ասլանին աղջիկը» (1967), «Սիփանայ քաջեր» (հ. 1, 2, 1967, 1970), «Լեռ եւ ճակատագիր» (1972) պատմվածքների ժող–ների, «Անժամանդրոս» (1978) վեպի, «Արեւելահայ գրականութիւն» (1965), «Նորայայտ տաղասաց մը Ստեփանոս Դաշտեցի» (1981) բանասիր. աշխ–ների:

ՍԻՄՈՆՅԱՆ Տիգրան Աբրահամի (1922–1992), նկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (1972): Հեղինակ է «Սևանի ձկնորսները» (1957), «Շինարարների առավոտը» (1960), «Հավերժություն» (եռապատկեր, 1968), «Զրույց ճանապարհին» (1970) և այլ թեմատիկ պատկերների, «Մտորում» («Կոմիտաս», 1969) կոմպոզիցիոն դիմանկարի ևն:

ՍԻՄՈՆՅԱՆ Ֆելիքս Լյուդվիգի (ծ. 1942), թավջութակահար: ՀՀ վաստ. արտիստ (1984): ԵՊԿ պրոֆ. (1966): Հայ արդի կոմպոզիտորների՝ թավջութակի համար

գրած երկերի առաջին մեկնաբանն ու խմբ–ը: 2000–ից՝ Ֆրանսիայում:

Լար. քառյակների միջազգ. մրցույթի (1969, Լիեժ, Բելգիա) դափնեկիր, ՀՀ Պետ. մրց.:

ՍԻՄՈՆՅԱՆ Ֆրանց Ավդալի (ծ. 1935), քանդ.: Հեղինակ է մոնումենտալ–դեկորատիվ հուշարձանների («Մուտք Հայաստան», 1978, «Զանգակ», 1979, կոմպոզիցիա, երկուսն էլ՝ Երևան, «Հաղթանակ», 1990, Սամարա, ևն), դիմաքանդակների («Էմմա Ծատուրյան», 1998, ևն), բարձրաքանդակների («Խաչելություն», 2001, ևն), ներքին և արտաքին ձևավորումների:

ՍԻՄՈՆՈՄՍԿԻ, 1. նեղուց Ճապոնիայում՝ Հոնսյու և Կյուսյու կղզիների միջև (կապված են ավտոկամրջով՝ 1068 *մ*): Ս–ի տակ կառուցվել են 2 երկաթ. թունելներ: Միացնում են Ներքին Ճապոն. ծովը Ճապոն. ծովին: Երկ.՝ 21 *կմ*, նվզգն լայն.՝ 0,6 *կմ*, խոր. նավարկուղում՝ 11 *մ*: Նվինգստները՝ Սիմոնոսեկի, Մոձի, Կիտակյուսու: 2. Ք–նվինգստ՝ Ճապոնիայի Հոնսյու կղզում: Բն.՝ 281 հզ. (2010):

ՍԻՄՈՆՈՎ Եվգենի Ռուբենի (1925–1994), ռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1975): Ռուբեն *Սիմոնովի* որդին: 1958–ից՝ Մոսկվայի Ե. Վախթանգովի անվ. թատրոնի ռեժ. (1968–ից՝ գլխ. ռեժ.), միաժամանակ, 1962–68–ին՝ Փոքր թատրոնի գլխ. ռեժ., 1987–94–ին՝ «Բարեկամություն» թատրոնի և իր հիմնադրած Ռ. Սիմոնովի անվ. թատրոն–ստուդիայի գեղ. ղեկ.: Բեմադրել է Վ. Շեքսպիրի «Երկու վերոնացիք» (1952), «Անտոնիոս և Կլեոպատրա» (1972), Դե Ֆիլիպոյի «Ֆիլումենա Մարտուրանո» (1956, ԵԴԹ՝ 1971), Վ. Վ. Մայակովսկու «Միստերիա բուֆ» (1981) ևն: ԽՍՀՄ Պետ. մրց. (1981):

ՍԻՄՈՆՈՎ Կոնստանտին (Կիրիլ) Միխայլովիչ (1915–1979), ռուս. գրող, հաս. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1974): 1938, 1950–54–ին՝ «Լիտերատուրնայա գազետա» (ռուս.) թերթի, 1946–50, 1954–58–ին՝ «Նովի միր» (ռուս.) ամսագրի գլխ. խմբ., 1946–54–ին՝ ԽՍՀՄ ԳՄ գլխ. քարտուղարի տեղակալ: Հեղինակ է «Քեզ հետ և առանց քեզ» (1942, հայ.՝ 1943), «Բարեկամներ և թշնամիներ» (1948, հայ.՝ 1943) և քնար. այլ ժող–ների, «Ողջերն ու մեռածները» (1959–71) եռերգության, որտեղ պատկերել է պատերազմի ողբերգ. դրվագներ, «Հարավային պատմվածքներ» (1956–61) ժող–ի, «Ռուս մարդիկ» (1942), «Օրեր և գիշերներ» (1943–44, հայ.՝ 1949), «Լոպատինի գրառումներից» (1965), «Քսան օր առանց պատերազմի» (1972) վիպակների, «Երիտասարդը՝ մեր քաղաքից» (1941), «Չորրորդը» (1961) պիեսների, նաև կինոսցենարների, հրապարակախոս. գործերի:

Լենինյան (1974), ԽՍՀՄ Պետ. (1942, 1943, 1946, 1947, 1949, 1950) մրց–ներ:

ՍԻՄՈՆՈՎ Միխայիլ Զաքարի (1906–1986), շինանյութերի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1954), պրոֆ. (1954): ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1950): ՀԽՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1966): Աշխ–ները վերաբերում են լցանյութերով բետոնև երկաթբետոնե կառուցատարրերի հաշվարկման և պատրաստման հարցերին:

ԽՍՀՄ (1951) և ՎԽՍՀ (1982) Պետ. մրց–ներ, ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (2), «Ոսկի աստղ», «Պատվո նշան» շքանշաններ:

ՍԻՄՈՆՈՎ Միխայիլ Պետրովիչ (1929–2011), ռուս. ավիակոնստրուկտոր: ՌԴ հերոս (1999): Պ. Օ. Սուխոյի փորձարար. ԿԲ–ի կոնստրուկտոր (1983–ից): Ս–ի ղեկավարությամբ ստեղծվել են մարտ. և սպորտ. ինքնաթիռներ, սավառնակներ:

Լենինյան (1976) և ՌԴ Պետ. (1996, 2002) մրց–ներ:

ՍԻՄՈՆՈՎ Յուրի Իվանովիչ (ծ. 1941), ռուս. դիրիժոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1981): «Լիստ–Վագներ» նվագախմբի հիմնադիրը (2001, Բուդապեշտ): 1970–85–ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի գլխ. դիրիժոր, 1986–ից՝ Փոքր թատրոնի սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր:

Դիրիժորների միջազգ. մրցույթի 1–ին մրց. (1968, Հռոմ):

ՍԻՄՈՆՈՎ Նիկոլայ Կոնստանտինովիչ (1901–1973), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1950): Սոց. աշխ. հերոս (1971): 1924–ից՝ Լենինգրադի Ա. Ս. Պուշկինի անվ. դրամայի թատրոնի դերասան (Սատին՝ Մ. Գորկու «Հատակում», Մաթիաս Կլաուզեն՝ Գ. Հաուպտմանի «Մայրամուտից առաջ», Պրոտասով՝ Լ. Ն. Տոլստոյի «Կենդանի դիակ», ևն): Նկարահանվել է կինոյում («Պետրոս I», «Բոռ», «Երկկենցաղ մարդը» ևն): ԽՍՀՄ (1941, 1947, 1950), ՌԽՖՍՀ (1973) Պետ. մրց–ներ:

ՍԻՄՈՆՈՎ Ռուբեն Նիկոլայի (1899–1968), դերասան, ռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1946): Պրոֆ. (1946): Եվգենի *Սիմոնովի* հայրը: 1920–ից՝ ՄԳԹ 3–րդ ստուդիայի (ղեկ.՝ Ե. Վախթանգով, 1926–ից՝ Ե. Վախթանգովի անվ. թատրոն) դերասան, 1924–ից՝ ռեժ., 1939–ից՝ գլխ. ռեժ.: Դերերից են՝ Խլեստակով (Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», 1939), Դոն Կիխոտ (Մ. Ա. Բուլգակովի «Դոն Կիխոտ», 1941), Դոմենիկո (Դե Ֆիլիպոյի «Ֆիլումենա Մարտուրանո», 1965) ևն: Բեմադրել է Լ. Ի. Սլավինի «Ինտերվենցիա» (1933), Ա. Կոռնեյչուկի «Ռազմաճակատ» (1942) ևն, Երևանի Գ. Սունդուկյանի անվ. և Գյումրիի Վ. Աճեմյանի անվ. թատրոններում՝ Ա. Ն. Օստրովսկու «Եկամտաբեր պաշտոնը» (1929), ԵՕՔԹ–ում՝ Պ. Ի. Չայկովսկու «Պիկովայա դաման» (1956):

ԽՍՀՄ Պետ. (1943, 1947, 1950), Լենինյան (1967) մրց–ներ:

ՍԻՄՈՆՈՎ Սերգեյ Գավրիլովիչ (1894–1986), հրաձգ. զենքի ռուս. կոնստրուկտոր: Սոց. աշխ. հերոս (1954): Ստեղծել է ինքնաձիգ հրացան, ինքնալիցքավորվող հակատանկ. զենք և կարաբին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942, 1949):

ՍԻՄՊԱԹԻԿ ԹԱՆԱՔ (հուն.՝ simpates – զգայուն), անտեսանելի թանաք, անգույն կամ թույլ գունավորած հեղուկ. օգտագործվում է գաղտնագրության համար: Ս. թ–ով գրված տեքստը սովոր. պայմաններում անտեսանելի է. ի հայտ է գալիս հատուկ միջոցներով (տաքացում, քիմ. միջոցներ ևն):

ՍԻՄՊԱԹԻԿ ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ, վեգետատիվ նյարդ. համակարգի մաս. ընդգրկում է ողնուղեղի կրծք. ու վերին գոտկային բաժինները և սահման. սիմպաթիկ ցողունի, արևային հյուսակի, միջընդերային հանգույցների նյարդ. բջիջներ, որոնց ելուստները նյարդավորում են բոլոր օրգանները: Ս. ն. հ. մասնակցում է օրգանիզմի մի շարք ֆունկցիաների կարգավորմանը. նրա նյարդաթելերով փոխանցվում են նյութափոխանակությունն ուժեղացնող, սրտի զարկերն արագացնող, անոթները կծկող, բիբերը լայնացնող ազդակներ ևն:

ՍԻՄՊԱՏՐԻԿ ՏԵՍԱԿԱՌԱՋԱՑՈՒՄ (< հուն. syn – միասին և patris – հայրենիք), տեսակառաջացման եղանակ էվոլյուցիայի ընթացքում, որի դեպքում օրգանիզմների նոր տեսակները ծագում են խիստ գերազանցող կամ համընկնող արեալներով ազգակից. խմբերից:

ՍԻՄՊԼՈՆ (Simplon), լ–անցք Ալպերում՝ Շվեյցարիայի հվ–ում: Բարձր.՝ 2005 *մ*: Լ–անցքով է անցնում Բեռն–Միլան ավտոճանապարհը: Ս–ի մոտ, շուրջ 700 *մ* բարձրյան վրա կառուցվել է երկթղ. թունել (երկ.՝ 19,8 *կմ*, փոքր մասով՝ Իտալիայում):

ՍԻՄՍ (Sims) Քրիստոֆեր (ծ. 1942), ամերիկացի տնտեսագետ: Տնտեսագիտ. ընկ–յան (1995), Ամերիկ. տնտեսագիտ. ասոցիացիայի (2012) նախագահ: Աշխ–ները վերաբերում են մակրոէկոնոմիկայում պատճառահետևանքային կապերի էմպիրիկ ուսումնասիրությանը:

Նորելյան մրց. (2011, Թ. *Սարջենթի* հետ):

ՍԻՄՍԱՐ, լ–շղթա Հայկ. լ–աշխարհում՝ Հայկ. Տավրոսի միջին մասում: Երկ.՝ ավելի քան 30 *կմ*, առլզն բարձր.՝ 2685 *մ* [Սիմսար (Կուրտիկ լ.)]: Զորերում սաղարթավոր անտառներ են, 1800 *մ*–ից բարձր՝ ալպ. մարգագետիններ:

ՍԻՄՎՈԼ, (հուն.՝ symbolon – նշան, հատկանիշ), **խորհրդանշան**, փիլ. կատեգորիա, որն ընդգրկում է մարդկային մշակույթի ոլորտի բոլոր արտահայտչաձևերը: Գիտ. մեջ (տրամաբ–յուն, մաթ.) նույնն է, ինչ նշանը:

ՍԻՄՎՈԼԻԶՄ, **խորհրդապաշտություն**, փիլ–գեղագիտ. և գր–գեղ. հոսանք XIX դ–ի վերջ–XX դ–ի սկզբի գրկ–յան մեջ և արվում: Կյանքը ճշմարտացի վերարտադրելու գեղ. պատկերի փոխարեն առաջադրվել է խորհրդանիշը (սիմվոլ), որը դարձել է գլխ. գաղափարի իմաստակիրը: Աշխարհի երևույթների հիմքում սիմվոլը հասկացվել է որպես իդեալականի և զգայականի համադրություն, և երևույթներն արտահայտվել են ամբողջական: Ս–ի փիլ–գեղագիտ. սկզբունքներն արտահայտվել են Ա. Շոպենհաուերի, Ֆ. Նիցշեի, Կ. Յունգի և ուր. երկերում: Սիմվոլիստները հակակրանքով էին լցված բուրժ. իրականության՝ նրա շահախնդրության և ոչմարդասիրության հանդեպ, թերահավատությամբ էին վերաբերվում բուրժ. իրականության առաջադիմությանը: Նրանց ստեղծագործություններին բնորոշ էին կենս. պայքարից հեռանալու և սեփ. հոգու մեջ պատսպարվելու, մենակության և անզոր հուսահատության տրամադրությունները, հոգևոր ազատության ձգտումը: Եվրոպայում Ս–ին հարել են Պ. Վեռլենը, Ս. Մալարմեն, Ա. Ռեմբոն, Օ. Ուայլդը, Է. Վերհառնը և ուր., Ռուսաստանում՝ Դ. Ս. Մերեժկովսկին, Զ. Ց. Գիպիուսը, Վ. Ց. Բրյուսովը, Կ. Դ. Բալմոնտը, Ֆ. Կ. Սոլոգուբը, Ա. Ա. Բլոկը և ուր.:

Ս–ի սկզբունքները հայ գրկ–յան մեջ որոշակիորեն երևան են եկել XX դ–ի սկզբին: Նրա ազդեցությունն արտահայտվել է Սիամանթոյի, Լ. Շանթի, Մ. Մեծարենցի, Տ. Զրաքյանի, Ա. Ահարոնյանի, Վ. Տերյանի և ուր. ստեղծագործություններում:

Կերպարվեստում՝ հիմնականում գեղանկարչության մեջ և գրաֆիկայում, 1860–80–ական թթ–ին Ս–ի որոշ գծեր արտահայտվել են նախառաֆայելական–

նների (Անգլիա), նեոիդեալիզմի վարպետների (նկարիչ Հ. ֆոն Մարե, գեղագետ Կ. Ֆիդլեր, Գերմանիա) գործերում: 1880-ական թթ-ի վերջին Ֆրանսիայում իրենց սիմվոլիստներ են հայտարարել Է. Բեռնարը, Պ. Գոգենը (ստեղծել է ինքնուրույն գեղ. սիմվոլներ): Այդ շրջանից սիմվոլը հաճախ արտահայտվել է ոչ թե սյուժեով, այլ իր իսկ պատկերի ձևով՝ հիմք դնելով սիմվոլիկ. գեղ. մտածողությանը: Հետագա ճանաչված ներկայացուցիչներից են Է. Մունկը, Գ. Մորոն, Մ. Ա. Վռուբելը, Մ. Կ. Չյուրլյոնիսը և ուր.: Ս-ին մոտ է «Նաբի» միավորման (Ֆրանսիա), նաև «մոդեռն» ոճի մի շարք վարպետների ստեղծագործությունը:

Ս-ի որոշակի տարրեր հայկ. թատրոն ներթափանցել են 1910-ական թթ-ից՝ Լ. Շանթի պիեսների բեմադրությունների միջոցով:

ՍԻՄՓՍՈՆ (Simpson) Թոմաս (1710–1761), անգլիացի մաթեմատիկոս: Աշխ-նե-րը վերաբերում են երկրչփ-յանը, մաթ. անալիզին, հավանականությունների տեսությանը: Հայտնի է Ս-ի բանաձևը (1743)՝ որոշյալ ինտեգրալների մոտավոր հաշվման համար (քառակուսային բանաձև, պարաբոլների բանաձև).

$$\int_a^b f(x)dx \approx \frac{h}{3}[f_0 + f_{2n} + 4(f_1 + f_3 + \cdots + f_{2n-1}) + 2(f_2 + \cdots + f_{2n-2})], \quad \text{որտեղ } h = \frac{(b-a)}{2n},$$

$f_k = f(a + kh)$, $k = 0, 1, 2, \ldots 2n$:

ՍԻՄՓՍՈՆ Նորման Ֆրեդերիկ (1919–2011), անգլիացի դրամատուրգ: Հեղինակ է «Խլացուցիչ ծնգծնգոց» (1958), «Իսկ եղել է նա ընդհանրապես» (1963) կատակերգությունների, «Հարրի Բլիչբեյքեր» (1976) վեպ-պարոդիայի:

ՍԻՄՓՍՈՆ Ջեյմս Յանգ (1811–1870), շոտլանդացի մանկաբարձ, վիրաբույժ, անեսթեզիոլոգիայի հիմնադիրներից: Առաջինն է մանկաբարձության և վիրաբուժության մեջ կիրառել քլորոֆորմը՝ որպես ցավազրկող միջոց (1847): Աշակել է նեղ կոնքի դեպքում կանխարգելիչ պտղաշրջման մեթոդը (1850): Հայտնագործել է մի շարք բժշկ. գործիքներ:

ՍԻՄՓՍՈՆ Ջորջ Քլարկ (1878–1965), անգլիացի օդերևութաբան: Ուսումնասիրել է մթն-ի էլ. երևույթները: Առաջարկել է կլիմայի տատանման (առաջանում է արեգակն. ճառագայթման փոփոխությունից) տեսություն (1934-ին):

ՍԻՄՓՍՈՆ, անապատ Ավստրալիայի կենտր. մասում: Տարածքը՝ 300 հզ. *կմ*²: Հիմնականում ավազային է, թմբերով (երկ.՝ մինչև 250 *կմ*, բարձր.՝ մինչև 30 *մ*): Տարեկան տեղումները 130 *մմ*-ից պակաս են: Աճում են ակացիա, նվենի, սպինիֆեքս ճիմ. խոտաբույս ևն:

ՍԻՄՖԵՐՈՊՈԼ, Ղրիմի Հանրապետության մայրաքաղաքը Սալգիր գետի ափին: Բն.՝ 341 հզ. (2010): Տրանսպորտ. հանգույց է: Ունի օդանավակայան: Տրոլեյբուսով կապված է Ղրիմի հվ. ափին: Զարգացած են սննդի, թեթև, քիմ., մեքենաշինության, շինանյութերի արդ-յան ճյուղերը, գինեգործությունը: Կան բուհեր, դրամատիկ. թատրոն, թանգարաններ ևն: Մ. թ. ա. III դ-ից մինչև մ. թ. IV դ. Ս-ի տեղում եղել է Սկյութ. պետության մայրաքաղաքը (Սկյութ. Նեապոլը), ապա՝ թաթար. Կերմենչիկ բերդը, XV դ-ում՝ Ակ Մեջետ թաթար. բնակավայրը, որի տեղում 1784-ին հիմնադրվել է Ս.:

ՍԻՄՖԻԼՆԵՐ, *բազմոտանիների* խմբի հոդվածոտանիների դաս: Երկ.՝ մինչև 1 *սմ*: Հայտնի է մոտ 150 տեսակ՝ տարածված լայնորեն: Զգայուն են չորության հանդեպ, ապրում են հողում, անտառ. փոռ-ցում: Սնվում են բուս. մնացորդներով:

ՍԻՄՖՈՆԻԱ (հուն.՝ symphonia – ներդաշնակություն, համահնչունություն), երաժշտ. խոշոր նվագախմբային (սիմֆ., հազվադեպ՝ լար., փող., ժող. գործիքների և այլ խմբերի համար) ստեղծագործություն՝ սոնատ. սիմֆ. ցիկլի ձևով: Բաղկացած է 4 (երբեմն՝ մինչև 7) հակադիր և միմյանց լրացնող մասերից. երբեմն մասնակցում են մեներգիչներ և երգչախումբ: Դաս. Ս. ձևավորվել է XVIII դ-ի վերջին և XIX դ-ի սկզբին (Յ. Հայդն, Վ. Ա. Մոցարտ, Լ. վան Բեթհովեն):

Հայկ. առաջին Ս-ի հեղինակը Հ. Եղիազարովն է (1933), սակայն ազգ. ինքնատիպ երևույթներ են Ա. Խաչատրյանի Ս-ները: Նվագախմբերի, նաև երգչախմբի համար Ս-ներ են գրել Հ. Ստեփանյանը, Լ. Խոջա-Էյնաթյանը, Գ. Եղիազարյանը, Ա. Հարությունյանը, Ջ. Տեր-Թադևոսյանը, Է. Միրզոյանը, Է. Հովհաննիսյանը, Ա. Տերտերյանը, Ա. Հարությունյանը և ուր.:

ՍԻՄՖՈՆԻԿ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, երաժշտություն սիմֆ. նվագախմբի համար, որը կարող է լինել մոնումենտալ ձևի՝ հագեցած գաղ. շեշտված բովանդակությամբ և խոր հուզականությամբ (սիմֆոնիա, սյուիտ, նախերգանք, կոնցերտ, ֆանտազիա, սիմֆոնիկ պոեմ ևն), նաև փոքր ձևի թեթև հանրամատչելի (պար, քայլերգ, դիվերտիսմենտ ևն) երաժշտություն: Զևավորվել է XVIII դ-ի կեսերին: Հայկ. Ս. ե-յան հիմնադիրն Ալեքսանդր *Սպենդիարյանն* է: Սիմֆ. երկեր է ստեղծել նաև Անուշավան *Տեր-Ղևոնդյանը*: Ժանրի վերելքը պայմանավորվել է Արամ *Խաչատրյանի սիմֆոնիաներով*, կոնցերտներով, բալետ. սյուիտներով ևն: Ս. ե-յան զարգացմանը նպաստել են Հ. Ստեփանյանը, Գ. Եղիազարյանը, Լ. Խոջա-Էյնաթյանը, Ս. Բալասանյանը, Ա. Հարությունյանը, Ղ. Սարյանը, Է. Միրզոյանը Ա. Բաբաջանյանը, Ջ. Տեր-Թադևոսյանը, Է. Հովհաննիսյանը, Ա. Տերտերյանը, Տ. Մանսուրյանը և ուր.:

ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ, տեխ. կատարող. հնարավորություններով, հնչերանգներով ամենահարուստ նվագախումբ, որն ընդգրկում է երաժշտ. գործիքների 5 խումբ՝ լար., փայտե և պղնձե փող., հարված. և կամիթ-ստեղն.: Առաջին դաս. կամ փոքր Ս. ն-ի կազմը ձևավորել է Յ. *Հայդնը*:

XIX դ-ից Ս. ն-ի կազմը համալրվել է տավիղներով, ռոյալով, երգեհոնով, նաև որոշ ժող. գործիքներով, ընդլայնվել են լար., փող. (ալտ., բաս ֆլեյտա, անգլ. եղջերափող, պիկոլո և բաս կլառնետներ, սաքսոֆոններ, կոնտրաֆագոտ ևն), հարված. գործիքների խմբերը:

ՍԻՄՖՈՆԻԿ ՊՈԵՄ, ծրագր. սիմֆ. երաժշտության ժանր: Մեկմասանի քնարադրամատիկ. կամ քնարապատմող. բնույթի նվագախմբային ստեղծագործություն՝ որոշակի սյուժեով (գր., գեղանկարչ., հազվադեպ՝ փիլ. կամ պատմ.): Բնորոշ են հուզականությունը, անբռնազբոս ծավալումը, ձևի ազատությունը: Ծրագր. Ս. պ-ի հիմնադիրը Ֆ. *Լիստն* է («Տասսո», «Պրելյուդներ» ևն): Ազգ. սյուժեով ծրագր-սիմֆ. առաջին պոեմի հեղինակը Ա. Տեր-Ղևոնդյանն է: Ժանրի զարգացմանը նպաստել են նաև Վ. Ամեմյանը, Ե. Երկանյանը, Ս. Շաքարյանը, Մ. Վարդազարյանը, Ա. Սաթյանը, Վ. Բաբայանը և ուր.:

ՍԻՄՖՈՋԱԶ (անգլ.՝ symphonic jazz – սիմֆոնիկ ջազ), ժամանց. երաժշտության տեսակ: Տերմինը ներմուծել է Պ. Ուայթմենը, որի նվագախմբի երկացանկում 1920-ական թթ-ին ընդգրկվել են սիմֆոնացված ջազ. ստեղծագործություններ: Սիմֆ. երաժշտության և ջազի համադրման բարձրարժեք նմուշ է Ջ. Գերշվինի «Ռապսոդիա բլյուզի տոներով» երաժշտ. երկը:

ՍԻՅՈՒԴԱԴ ԲՈԼԻՎԱՐ (Ciudad Bolivar), ք. Վենեսուելայի հս-արլ-ում, Բոլիվար նահանգ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 479 հզ. (2010): Նվինգատ՝ Օրինոկո գետի ափին (մատչելի է ծով. նավերի համար): Գողտյան շրջանների կենտրոն է: Կան բուհեր, գաղութ. ժամանակաշրջանի ճարտ. հուշարձաններ: Հիմնադրվել է 1764-ին՝ Անգոստուրա անունով, ներկա անվանումը՝ 1846-ից:

ՍԻՆԱԳՈԳ (հուն.՝ synagoge – ժողով), աղոթատուն և հավատացյալների համայնք հուդայականության մեջ:

ՍԻՆԱԿԵՆԵԼԵՎ (Turdus pilaris), *կեռնեխնևրի* ընտանիքի թռչուն: Ձմեռող է: Մարմնի երկ.՝ 25,5, թևերի բացվածքը՝ 39–42 *սմ*: Աղմկարար է: Ապրում է անտառեզրերին, պտղատու այգիներում, մշակովի դաշտերում ևն: Մսվում է անողնաշարաներով, ձմռանը՝ պտուղներով և սերմերով: ՀՀ-ում առաջին երամները հայտնվում են հոկտ-ի վերջին տասնօրյակից: Սիրող. և մարզ. որսորդության թռչուն է: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՍԻՆԱԿԻ ԼԵՌՆԵՐ, Հայկ. պարի միջին մասում: Տարածվում են Աղտոռնոր (Աղտնի) լ-անցքից մինչև Գայլատու (Բալըղ) լիճը: Ս. լ-ի պատվանդանը բարձրադիր (բարձր.՝ 2100–2400 *մ*), համեմատաբար հարթ մակերևույթով ջրբաժան. սարավանդ է Արաքս և Եփրատ գետերի ավազանների միջև, որի վրա բարձրանում են ձորերով ու հեղեղատներով մասնատված մի շարք գմբեթաձև հանգած հրաբուխներ՝ Պեղիդաղ (2897 մ), Սինակ (2774 *մ*): Արլ. լանջերը լերկ են, անջուր, արմ. լանջերը հարուստ են աղբյուրներով և լճակներով:

ՍԻՆԱՅ Յակով Գրիգորևիչ (ծ. 1935), ռուս մաթեմատիկոս: ՌԳԱ ակադ. (1991): 1993-ից՝ ԱՄՆ-ում: Աշխ-ները վերաբերում են էրգոդիական տեսությանը, դինամիկ համակարգերին, վիճակագր. ֆիզիկային, հավանականությունների տեսությանը:

Մի շարք, այդ թվում՝ Ա. Ա. Մարկովի (1989), Պուանկարեի (2009), Աբելի (2014), Մարսել Գրոսմանի (2015, երեքն էլ՝ միջազգ.) անվ. մրց-ներ:

ՍԻՆԱՅԻ ԹԵՐԱԿՂԶԻ, Եգիպտոսում՝ Սուեզի և Աքաբա ծոցերի միջև: Տարածքը՝ շուրջ 25 հզ. *կմ*²: Հիմնականում լեռներ (բարձր.՝ 2642 *մ*, Կատերին լ.) և սարահարթեր, կիսաանապատներ ու անապատներ են: Հարուստ է նավթ. հանքավայրով:

ՍԻՆԱՆ, **Սինան Մեծ, Խոջա Միմար Սինան** (1490–1588), ճարտ., ճարտարագետ: 1539-ից՝ Օսմ. սուլթանության գլխ. ճարտ-ը: Նշանավոր գործերն են՝ Շահզադե (1543–48), Սուլեյմանիե (1550–57, երկուսն էլ՝ Կ. Պոլսում) և Սելիմիե

(1569–75, Ադրիանապոլսում) մզկիթները: Ս–ին վերագրվում է շուրջ 360 շինություն (300–ը՝ Թուրքիայում): Կառույցներ ունի նաև Բոսնիա և Հերցեգովինայում, Մակեդոնիայում, Սիրիայում, Ղրիմում և այլուր:

ՍԻՆԱՆԹՐՈՊ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐ (< հուն. syn – միասին և anthropos – մարդ), կենդանիներ և բույսեր, որոնց գոյությունը սերտորեն կապված է մարդու և բնակավայրերի հետ: Դրանք մարդու և ընտանի կենդանիների մակաբույծներն են, նաև աննդամթերքով և տնտ–յան թափոններով սնվող կենդանիները: Մի շարք Ս. օ. նյութ. մեծ վնաս են հասցնում: Բնակավայրերին մոտ աճող բույսերը կոչվում են աղբանոցային (ռուդերալ):

ՍԻՆԱՆԹՐՈՊՈՄՆԵՐ (< ուշ. լատ. Sina – Չինաստան և հուն.՝ anthropos – մարդ), պեղածո մարդիկ, *արքանտրոպների* ներկայացուցիչներ: Մնացորդներն առաջինը հայտնաբերվել է 1927–37–ին Չինաստանում (որտեղից՝ անվանումը): Գտածոների մեծ մասի տարիքը 460–230 հզ. տարի է: Չնաբան. առանձնահատկություններով մոտ են *պիթեկանթրոպուսներին*:

ՍԻՆԱՆՅԱՆ Խորեն (1868–1928), աստղագետ, մանկավարժ, ՎնտՄՄ անդամ (1892): 1894–ին հայտնագործել է Յուպիտերի (Լուսնթագ) 6–րդ արբանյակը, սակայն Վատիկանի դիտարանի հանձնաժողովը չի հաստատել այն: Աշխ–ներ ունի նաև մթն–ում թթվածնի պարունակության, երկնս. լուսատուների շարժման, աստղերի առկայծումներով նրանց հեռ–յան որոշման վերաբերյալ: Առաջարկել է օրացույցի նախագիծ, որտեղ բոլոր ամիսների միևնույն թվերին համապատասխանում են շաբաթվա նույն օրերը: Ֆրանսիայի աստղագիտ. ընկ–յան անդամ (1915):

ՍԻՆԱՆՅԱՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ, հայկ. սիմֆ. նվագախումբ 1861–96–ին Կ. Պոլսում (հիմնադիր՝ Գրիգոր Սինանյան): 1888–ից ունեցել է 40 երաժիշտ (դիրիժոր՝ Հարություն Սինանյան): Նվագացանկում՝ հատվածներ օպերաներից, օպերետներից, երգերի ու պարեղանակների նվագախմբային փոխադրումներ, նաև Լ. վան Բեթհովենի, Վ. Ա. Մոցարտի, Տ. Չուխաճյանի, Հ. Սինանյանի և ուր. երկերից:

ՍԻՆԱՆՅԱՆՆԵՐ, երաժիշտների ընտանիք Կ. Պոլսում: **Գրիգոր** Ս. (1836–1914), ջութակահար: Կ. Պոլսում հիմնադրել է հայկ. առաջին սիմֆ. նվագախումբը (տես *Սինանյան նվագախումբ*): Զավակները՝ Վերոնիկան և Թագուհին, դաշնակահարուհիներ էին, Անտոնը՝ ջութակահար, Հովսեփը՝ թավջութակահար, **Հարությունը** (1872–1939)՝ ջութակահար, դաշնակահար, երգեհոնահար, կոմպոզիտոր և դիրիժոր: Կոմիտասին է նվիրել իր «Ազգային երգերը» և «Մեսրոպյան քայլերգը»: Գրել է «Մեծ ֆանտազիա» ջութակի համար, «Մխիթար քայլերգ», գործիք. և այլ գործեր: **Գևորգ Անտոնի Ս.** (1906–մ. թ. անհտ), ջութակահար: Հեղինակ է ջութակի, ալտի, կոնտրաբասի համար պիեսների:

ՍԻՆԱՊՍ (հուն.՝ synapsis – կապ, միացում), նյարդաբջիջների (նեյրոնների) միմյանց և կատարող օրգանի բջիջների հետ շփման (կապի) տեղը: Միջնեյրոն. Ս–ները գոյանում են սովորաբար մեկ նյարդաբջջի աքսոնի ճյուղավորումներով և մյուսի մարմնով, դենդրիտներով կամ աքսոնով: Գլխուղեղի խոշոր նեյրոններն ունեն 4–20 հզ. Ս–ներ, որոշ նեյրոններ՝ միայն 1–ական:

ՍԻՆԱՓՅԱՆ Գասպար (1814–1872), բժիշկ, մանկավարժ: Բժշկ. գիտ. դ–ր (1843): 1843–ից Կ. Պոլսում զբաղվել է գործն. բժշկությամբ: Աշխ–ները վերաբերում են երիկամաավազանաբորբի հետծննդյան այսակրության (դեմոնոպաթիա), Թուրքիայի բանտերում պատժիչ համակարգի և հիգիենայի հարցերին, որոնց մեծ մասը տպագրվել է Կ. Պոլսի «Գազեթ մեդիկալ դ'Օրիենթ» (ֆրանս.) բժշկ. ամսագրում: Կ. Պոլսի բժշկ. ընկ–յան նախագահ, պատվ. անդամ:

ՍԻՆԱՔԵՐԻԲ, **Սենեքերիմ** (ծ. թ. անհտ–մ. թ. ա. 681), Ասորեստանի թագավոր՝ մ. թ. ա. 705–ից: Հաջորդել է հորը՝ *Սարգոն II*–ին: Մայրաքաղաքը Դուռ–Շարուկինից տեղափոխել է Նինվե: Զոհ է դարձել դավադրության, որի մասնակիցներից էին նրա որդիներ Ադրամելիքը և Աշուրասարը, որոնց հալածել է կրտսեր որդին՝ Ասարհադոնը: Եղբայրները փախել են Հայկ. լ–աշխարհ (Արարատի երկիր). այդ մասին տեղեկություն կա Աստվածաշնչում (Դ Թագավորաց, ԺԹ, 37) և Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ (Ա, իգ): Պատմ. այդ եղելությունն արտահայտված է «Մասունցի Դավիթ» էպոսում, որտեղ Ադրամելիքն ու Աշուրասարը հիշատակվում են Սանասար ու Բաղդասար կամ Ադրամելիք և Սանասար անուններով:

ՍԻՆԳ (Sunge) Ռիչարդ Լորենս Միլինգթոն (1914–1994), անգլիացի կենսաքիմիկոս: Աշակել է (1941, Ա. Ջ. Պ. *Մարտինի* հետ) բաշխական քրոմատագրության մեթոդը: Նորելյան մրց. (1952, Ա. Ջ. Պ. Մարտինի հետ):

ՍԻՆԳԱՄԻԱ, տես *Բեղմնավորում*:

ՍԻՆԳԱՄՆԵՐ (Syngamus), *նեմատոդների* դասի որդերի սեռ: Մակաբուծում են թռչունների շնչուղիներում, առաջացնում սինգամոզ հիվանդությունը: Արուն (երկ.՝ մինչև 6 *մմ*) էգի (երկ.՝ մինչև 20 *մմ*) հետ մշտապես զուգավորման վիճակում է (այստեղից՝ Ս. անվանումը): Հայտնի է 10 տեսակ:

ՍԻՆԳԱՊՈՒՐ (Singapore), **Սինգապուրի Հանրապետություն** (Republic of Singapore), ք–պետություն Հվ–արլ. Ասիայում՝ համանուն և հարակից մանր կղզիներում: Տարածքը՝ 710 *կմ*², բն.՝ 5 մլն (2009, Մալայզիայի Ջոհոր Բարու ք–ի հետ), որին միացած է Ջոհոր նեղուցով անցնող պատնեշով՝ առաջացնելով արտասահմանային ագլոմերացիա՝ 6 մլն բն.: Պետ. լեզուները՝ անգլ., չին., մալայերեն, թամիլերեն: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Հավատացյալները հիմնականում բուդդայական, հինդուական, մահմեդական և քրիստոնյա են: Բաժանված է 5 վարչ. օկրուգների: Անդամակցում է ՄԱԿ–ին, Ազգերի համագործակցությանը, Հվ–արլ. Ասիայի պետությունների միավորմանը ևն: Տնտեսապես բարձր զարգացած երկիր է՝ արտահանող տնտ–յամբ: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 47 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է էլեկտրոն. և էլեկտրատեխ. սարքեր, դեղորայք, նավթամթերք, արդ. սարքավորումներ, պլաստմասսաներ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, սննդամթերք, վառելանյութ, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ սինգապուր. դոլար:

Միջնադարում եղել է տարբեր պետությունների և պետ. միավորումների կազմում: Մինչև 1819–ը կղզին պատկանել է Ջոհոր–մալայական սուլթանությանը: 1819–ին անցել է անգլ. Արևելահնդ. ընկ–յանը: 1826–ին Ս. մտել է անգլ. Սթրեյթս Սեթլմենտս գաղութի կազմի մեջ: ԵՀՊ–ի ժամանակ կղզին զավթել են (1942–45–ին) ճապոն. զորքերը: Պատերազմից հետո անկախության համար պայքարն ուժեղացել է: 1956–58–ի անգլո–սինգապուրյան բանակցություններից հետո Ս. դարձել է (1959) «ինքնակառավարվող պետություն» Բրիտ. համագործակցության կազմում: 1963–ին Ս. մտել է Մալայզիայի դաշնության մեջ, 1965–ին տարաձայնությունների պատճառով դուրս է եկել: 1965–ից ՄԱԿ–ի անդամ է: 1965–ի դեկտ. 22–ին Ս. հռչակվել է հանրապետություն:

Հայերը Ս–ում սկսել են հաստատվել XVIII դ–ի վերջից: Եկել են հիմնականում Մալակկա թ–կղզուց, Հնդկաստանից, Նոր Ջուղայից: 1820–ական թթ–ի սկզբին երկրում գործել են հայկ. 3 առևտր. ընկ–ներ: Հայերը եկեղեցի են վարձել իրենց հոգևոր կարիքները հոգալու համար: 1827–ին Ս–ի հայկ. համայնքը եկեղեցի կառուցելու թույլտվություն է ստացել, 1835–ին կառուցվել է Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (Ս–ի առաջին քրիստ. եկեղեցին, վերաբացվել է 1996–ին): 1849–53–ին լույս է տեսել «Ուսումնասէր» պարբ–ը: XIX դ–ի կեսին հայերը հիմնադրել են 2 տպարան, 1917–ին՝ ՀԲԸՄ Ս–ի մասնաճյուղը: Ներկայում Ս–ում ապրում է մի քանի տասնյակ հայ:

ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՆԵՂՈՒՑ, Մալակկա թ–կղզու հվ. ծայրամասի ու Սինգապուր կղզու և Ռիաու կղզեխմբի միջև: Միացնում է Հվ–չին. ծովը Մալակկայի նեղուցին: Երկ.՝ 114 *կմ*, լայն.՝ 12–37 *կմ*, առլցն խոր. նավարկուղում՝ 22 *մ*: Ափին է *Սինգապուրը*:

«ՍԻՆԴԲԱԴ–ՆԱՄԵ», XII դ–ի պարսկ. գր. հուշարձան: Առաջացել է հին հնդ. բնօրինակի պիվ–ի թարգմ–յունից: Ներառում է 34 ուսուցող. առակներ:

ՍԻՆԴԻԿԱՏ (ուշ լատ.՝ syndicus – հավատարմատար, ներկայացուցիչ), ձեռն–ների միավորման ձևերից, որոնք իրականացնում են ընդհ. առևտր. գործունեություն (գների որոշում, հումքի գնում, արտադրանքի իրացում ևն)՝ պահպանելով իրենց արտադր. և իրավաբ. ինքնուրույնությունը:

ՍԻՆԴՀԻ, հնդարիական ժողդ Պակիստանի հվ–արլ–ում, Սինդ պրովինցիայի հիմն. բնակչությունը: Թվաքանակը՝ 24,4 մլն (2008): Ապրում են նաև Հնդկաստանում (Ռաջաստհան նհնգ–ում, 2,5 մլն, 2001): Լեզուն՝ սինդհի: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են, Հնդկաստանում՝ հինդուիստ:

ՍԻՆԴՀԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, սինդհի ժողդ–ի գրկ–ը: Ս. գ–յան հնագույն հուշարձանը *«Մահաբհարաթա»*–ն է (IX–X դդ.): Պահպանվել են հատվածներ XIV դ–ի բանաստեղծների չափածո գործերից, Կազի Կազանի (ծ. թ. անհտ. – 1551) և Շահ Աբդուլա Քարիմ Բուլարիի (1528–1623) սուֆիական բանաստեղծություններից: Դաս. շրջանի խոշորագույն բանաստեղծը Շահ Աբդուլ Լաթիֆ Բհիթային է (1689/90–1752), որի հետևորդներն են հանրաճանաչ երգերի հեղինակ, քնարերգու Սաչալ Սարմաստը (1739–1826) և Սամին (1743–1850): Ս. գ–յան մեջ պարսկ.

պոեզիայի ազդեցությունն ուժեղացել է XIX դ–ից: Բանաստեղծներ Բեդիլը (1814–1873), Դալապատը (ծ. թ. անհտ–1841), Բեքասը (1858–1881) և ուր. օգտագործել են սուֆիական պոեզիային բնորոշ պատկերներ (վարդ ու սոխակ, գինի ու մատռվակ, մոմ ու թիթեռ): XIX դ–ի վերջերին Ս. գ–յան մեջ առաջացել է լուսավոր. ուղղությունը, որը գլխավորել է Միրզա Կալիչ Բեգը (1853–1929): Երևան են եկել արձակն ու դրաման [Կաուդոմալ Չանդանմալ (ծ. թ. անհտ – 1916), Դայարամ Գիդումալ (1856–1927) և ուր.]: Հնդկաստանը 1947–ին 2 մասի բաժանվելուց հետո Ս. գ. զարգացել է և՛ Հնդկաստանում, և՛ Պակիստանում: Առավել հայտնի ժամանակակից բանաստեղծներից են Նարայան Շյամը, Անչալը, Ռահին և ուր., արձակագիրներից՝ Ռամ Փանջվանին, Ամար Ջալիլը, Անջամ Հալային և ուր.:

ՍԻՆԴՈ Կանետո (1912–2012), ճապոնացի կինոռեժ., սցենարիստ: Համաշխ. ճանաչման է արժանացել «Լերկ կղզին» (1960) ֆիլմով: Նկարահանել է նաև «Ապրել այսօր, մեռնել վաղը» (1970), «Տիկուձանի միայնակ ճամփորդությունը» (1977), «Հորիզոն» (1984), «Կյանքի ծարավը» (1999), «Բացիկ» (2011) ևն:

ՍԻՆԴՐԻԿ (Poligonatum), **սինդրուկ, Սողոմոնի կնիք, կցմցուկ**, հովտաշուշանազգիների ընտանիքի կոճղարմատավոր խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 30 (այլ տվյալներով՝ 50) տեսակ, ՀՀ–ում 6 (սովոր., բազմածաղիկ, օղակավոր, բուրավետ)՝ Տավուշի, Լոռու, Սյունիքի, Կոտայքի և այլ մարզերի անտառներում: Դեղաբույս է, պարունակում է ալկալոիդներ: Պատրաստուկներն օգտագործում են որպես ցավազրկիչ, հակաբորբոք. միջոց, երիտասարդ ընձյուղները՝ սննդի մեջ: Որոշ տեսակներ գեղազարդիչ են:

ՍԻՆԵԽԻԱՆԵՐ (հուն.՝ synecheia – անընդհատություն, կապ), **կպումներ**, բնածին կամ ձեռքբերովի (օր.՝ բորբոքումներից հետո) սերտաճումներ հարևան օրգանների կամ շճային մակերևույթների միջև (օր.՝ որովայնամզի, կրծքամզի, սրտապարկի Ս.):

ՍԻՆԵՍԹԵԶԻԱ (հուն.՝ synesthesis – համազգացողություն), ընկալման երևույթ, երբ տվյալ զգացողության օրգանը գրգռելիս նրա համար առանձնահատուկ զգացողությունների հետ մեկտեղ առաջանում են նաև այլ զգայարանի համապատասխանող զգացողություններ (օր.՝ «գունային լողություն» ձայն. զգացողություն՝ ձայնն ընկալելիս, ևն):

ՍԻՆԵՐԱԿՆԵՐ, վերին (առաջային) և ստորին (հետին), ցամաք. ողնաշարավորների արյան մեծ շրջանառության ամենախոշոր երակները. երկկենցաղների Ս. արյուն են բերում դեպի երակածոց, սողուններինը, թռչուններինը և կաթնասուններինը՝ անմիջապես դեպի աջ նախասիրտ:

ՍԻՆԶՈՈՒՆՈՐԻԱ (< հուն. syn – միասին, *zonn*... և chōrco տարածվել), բույսերի պտուղների և սերմերի տարածումը կենդանիների միջոցով, որոնք կեր (օր.՝ ընկուզիկներ, կաղին) պաշարելիս դրանք տեղափոխում են նոր վայրեր:

ՍԻՆԷԿՈԼՈԳԻԱ, էկոլոգիայի բաժին. ուսումնասիրում է կենսահամակեցությունը:

ՍԻՆԹԵԶ ՔԻՄԻԱԿԱՆ, տարբեր նյութերի նպատակադրված ստացումը քիմ. ռեակցիաների միջոցով: Հիմնված է սինթեզվող նյութի կառուցվածքի և ելանյութերի ռեակցիոնունակության ու կառուցվածքի իմացության վրա: Երբեմն քիմ. սինթեզ ասելով՝ հասկանում են բարդ նյութերի ստացումն առավել պարզերից:

ՍԻՆԹԵԶ-ԳԱԶ, կազմված է CO–ից (40–60 %) և H_2–ից (30–50 %): Ստանում են ջր. գոլորշու և O_2–ի հետ բնական գազի կոնվերսիայով, ինչպես նաև վառելանյութերի գազացմամբ: Ածխաջրածինների, մեթիլ սպիրտի արտադրյան հումք է:

ՍԻՆԹԵՏԻԿ ԲՅՈՒԼԵՂՆԵՐ, ածեցվում են լաբորատոր. կամ գործարան. պայմաններում: Մի քանիսը չեն հանդիպում բնության մեջ, բայց համարվում են կարևոր տեխ. նյութեր, օր.՝ Ge–ն ու Si–ը կիսահաղորդչ. էլեկտրոնիկայում: Մյուս Ս. բ. հանդիպում են ոչ բավարար քանակներով (օր.՝ ալմաստը) կամ չունեն անհրաժեշտ մաքրություն և չափեր (սուտակ, քվարց): Շատ Ս. բ. (տոպազ, սապֆիր, աքվամարին, ֆիանիտներ ևն) կիրառվում են ժամացույցների, ոսկերչ. արդ–յան մեջ:

ՍԻՆԹԵՏԻԿ ՅՈՒՂԵՐ, սիլիցիումօրգ. հեղուկներ, ֆոսֆորային, ադիպինա– և այլ թթուների էսթերներ, պոլիալկիլենգլիկոլներ ևն, կիրառվում են գլխավորապես որպես քսանյութեր, ջերմակիրներ, պլաստիկ քսուկների բաղադրիչներ:

ՍԻՆԻՆ, ք. Չինաստանում՝ Հուանշոյ գետի ափին, Յինհայ պրովինցիայի վարչ. և գլխ. արդ–յան կենտրոնը: Բն.՝ 765,5 հզ. (2010):

ՍԻՆԿԼԻՆԱԼ (հուն.՝ sinklino – թեքվել), ապարների շերտերի դեպի ներքև (խորքը) ճկվածք: Ս–ի միջուկում տեղադրված են ավելի երիտասարդ ապարներ, քան թևերում:

ՍԻՆԿՐԵՏԻԶՄ (հուն.՝ synkretismos – միավորում), 1. անբաժանելիություն, որը բնորոշում է որևէ երևույթի ոչ զարգացած վիճակը (օր.՝ մարդկային մշակույթի նախն. փուլում բնորոշ է եղել արվ–ին, երբ երաժշտությունը, պոեզիան, պարը միմյանցից դեռևս տարանջատված չէին, երեխայի զարգացման վաղ շրջանում հոգեկան գործընթացների ոչ մասնատվածությունը ևն): 2. Տարասեռ բաղադրիչների ոչ օրգ. միաձուլումը, օր.՝ տարբեր պաշտամունքների և կրոն. համակարգերի Ս. հելլենիզմի շրջանում:

ՍԻՆՀԱԼՆԵՐ (ինքնանվանումը՝ սինհալա), ժողդ, Շրի Լանկա հանրապետության հիմն. բնակչությունը: Ընդհ. թիվը՝ շուրջ 13,9 մլն (2001): Լեզուն՝ սինհալերեն: Հավատացյալները հիմնականում բուդդայական են:

ՍԻՆՀԱՅԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, հեղ–յուն Չինաստանում 1911–13–ին: Սկսվել է 1911–ի Ուչանի հեղ–յամբ (չին. օրացույցով «սինհայ» տարում): Տապալվել է մանջուր. Ցին հարստությունը, հռչակվել հանրապետություն:

«ՍԻՆՀՈՒԱ», ՉԺՀ–ի պետ. տեղեկատվ. գործակալությունը: Հիմնադրվել է 1931–ին: Կենտր. գրասենյակը՝ Պեկինում: Ունի ավելի քան 100 մասնաճյուղ տարբեր երկրներում: Հաղորդումները հեռարձակվում են չին., անգլ., ֆրանս., ռուս., իսպ., արաբ., ճապոն., հասանելի են Ասիայի, Մերձ. Արևելքի, Լատ. Ամերիկայի ու Աֆրիկայի բազմաթիվ երկրներում:

ՍԻՆՁ, **քոշմորուք**, աստղածաղկազգիների (բարդածաղկավորներ) ընտանիքի երկամյա կամ բազմամյա, կաթնանման հյութ պարունակող խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 150 (ՀՀ–ում՝ 12) տեսակ: ՀՀ–ում լայնորեն տարածված հացազգատերև Ս–ի ցողունները, տերևները և արմատներն օգտագործում են սննդի մեջ: Շատ տեսակներ մեղրատու են, դեղաբույս:

ՍԻՆՅԱՆ, ք. Չինաստանի Հենան պրովինցիայում: Բն.՝ 2 մլն (2010): Երկաթահանքի արդյունահանման կենտրոն է: Զարգացած են մեքենաշինությունը, քիմ., տեքստիլ արդ–յան ճյուղերը:

ՍԻՆՅԱՎՍԿԻ Անդրեյ Դանատովիչ (1925–1997), ռուս գրող, գրականագետ, հրապարակախոս: 1973–ից՝ վտարանդի: 1965–ին Յ. Մ. Դանիելի հետ մեղադրվել է հակախորհրդ. գործունեության համար և 6 տարի անցկացրել է համակենտրոնացման ճամբարում: Հեղինակ է «Ի՞նչ է սոցիալիստական ռեալիզմը» (1959) հոդվածի, «Դատարանն է գալիս» (1959), «Լյուբիմով» (1963) գրոտեսկերգիծ. պատմվածքների, «Ֆանտաստիկ պատմություններ» (1961, վերջին երեքը՝ Աբրամ Տերց կեղծանունով) ժող–ի (բոլորը հրատարակել է արտերկրում), «Ձայն երգչախմբից» (հրտ.՝ 1973) օրագրության և «Զբոսանքներ Պուշկինի հետ», «Գոգոլի ստվերում» (երկուսն էլ հրտ.՝ 1975) գր. ուսումնասիրությունների, «Բարի գիշեր» (1984), ֆանտաստիկ. «Կատվի տունը» (1998) վեպերի:

ՍԻՆՅՈՐԵ (Signoret, Կամինկեր) Սիմոնա (1921–1985), ֆրանսիացի դերասանուհի: Ի. *Մոնտանի* կինը: Նկարահանվել է «Արշալույսի դևերը», «Դիվային հոգիներ», «Ոսկե սաղավարտ», «Թերեզ Ռաքեն», «Սալեմի վհուկները», «Տեղ վերևում» (խորհրդ. էկրանին՝ «Ճանապարհ դեպի բարձր հասարակություն»), «Օր և ժամ», «Հիմարների նավը», «Կյանքն առջևում է» և այլ ֆիլմերում: Ս–ին բնորոշ են ուժեղ դրամատիկ. խառնվածքը, զուսպ քնարականությունը, կտրուկ խաղաոճը: «Օսկար» (1959), «Սեզար» (1977) մրց–ներ:

ՍԻՆՈԴ (հուն. – հավաքույթ, ժողով), բարձրաստիճան հոգևորականների ժողով մի շարք ուղղափառ և բողոք. եկեղեցիներում: Ռուսաստանում ստեղծվել է 1721–ին՝ որպես ՌՈՒԵ կառավարման բարձրագույն մարմին (Սրբազան Ս.)՝ փոխարինելով պատրիարքությանը: Ս–ի անդամներին նշանակել է Ռուսաց կայսրը: ՌՈՒԵ պատրիարքության վերականգնումից (1917) հետո Ս. վերստեղծվել է իբրև պատրիարքին կից զուտ եկեղեց. խորհրդակց. մարմին՝ կազմված բարձրաստիճան հոգևորականներից:

Արլ. Հայաստանի Ռուս. կայսրությանը միանալուց (1828) հետո, ըստ «*Պոլոժենիե*»–ի, 1837–ին Ս. ստեղծվել է նաև Ամենայն հայոց կաթողիկոսին կից՝ 8 հոգուց բաղկացած: Սր Էջմիածնի Ս. գործել է մինչև 1917–ը:

ՍԻՆՈԴԱԿԱՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ պտտման (հուն.՝ sinodos – միացում, մոտեցում), ժամանակահատված, որի ընթացքում Արեգակն. համակարգի որևէ մարմին, իր ուղեծրով պտտվելով, վերադառնում է Արեգակի նկատմամբ նույն դիրքին՝ Երկրից դիտողի համար: Լուսնի համար շուրջ 1 ամիս է:

ՍԻՆՈՊԵ, Յուպիտերի արբանյակ: Հայտնաբերել է Ս. Նիկոլսոնը (1914, ԱՄՆ): Հեռ. Յուպիտերից՝ 23,7 մլն *կմ*, տրամագիծը՝ մոտ 30 *կմ*, պտտման սիդեր. պարբերությունը՝ 758 օր:

ՍԻՆՈՊԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1853, ծովամարտ *Ղրիմի պատերազմի* (1853–56) ժամանակ [նոյեմբ. 18 (30)] Սինոպի խորշում (Սև ծովի հվ., Սինոպ ք–ի մոտ, Թուրքիա): Փոխծովակալ Պ. Ս. *Նախիմովի* ռուս. էսկադրան ոչնչացրել է Օսման փաշայի թուրք. էսկադրային: Ս. ճ–ին մասնակցել է Կովկասի առափնյա պաշտպ–յան գծի ղեկ. հայազգի փոխծովակալ Լազար *Սերեբրյակովը*: Այն առագաստանավերի դարաշրջանի վերջին խոշոր ճակատամարտն էր:

«ՍԻՆՈՓՍԻՍ» («Synopsis»), գիտ. պարբ. (1992–97, Երևան, հոդվածները՝ անգլ., ֆրանս. և ռուս.): Հումանիտար և սոցիալ. հետազոտությունների «Էյդոս» կենտրոնի հրտ–յուն: Խմբ–ներ՝ Օլեգ Գաբրիելյան, Վլադիմիր Օսիպով:

«ՍԻՆՈՓՍԻՍ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ, SS ոլորտի ձեռն. ՀՀ–ում: Հիմնադրվել է 2004–ին: Գործունեությունն իրականացնում է ԳՀ ճարտարագիտ. աշխ–ների, էլեկտրոն. նախագծման ավտոմատացման, արտադր–յան համար նախագծման–կիսահաղորդչ., մտավոր սեփականության մշակման ոլորտներում: Գործադիր տնօրենն՝ Հովիկ Մուսայելյան: Կենտրոնատեղին՝ Երևանում:

ՍԻՆՈՅԱՆ, ք. Հս. Չինաստանի Հենան պրովինցիայում: Բն.՝ 744 հզ. (2010): Կան թեթև և սննդի արդ–յան ձեռն–ներ:


ՍԻՆՏՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ [ճապոն.՝ սինտո – բառացի՝ աստվածների ուղի (ուսմունք)], Ճապոնիայում տարածված կրոն: Ս–յան հիմքում բնության աստվածությունների և նախնիների պաշտամունքն է: Ս–յան բարձրագույն աստվածությունը Ամատերասուն է, նրա հետնորդը՝ Չիմուն: 1868–1945–ին՝ պետ. կրոն:

ՍԻՆՋՅԱՆ–ՈՒՅԳՈՒՐՅԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ՇՐՋԱՆ, Չինաստանի հս–արմ–ում: Տարածքը՝ 1,66 մլն *կմ*^{2}, բն.՝ 22 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ *Ուրումչի*:

ՍԻՆՈՒԶԻԱ (հուն.՝ synusia – համատեղ գոյակցություն, համակեցություն), բույսերի տեսակների ամբողջություն, որոնք պատկանում են մեկ կամ իրար մոտիկ կենսաձևերի: Օր.՝ բարեխառն գոտու անտառներում կան մի քանի Ս–ներ՝ հարկաշարային (ծառեր, թփեր), էպիֆիտային քարաքոսեր, մամուռներ և այլ Ս–ներ, որոնք բուսահամակեցության կառուցվածք. մասն են:

ՍԻՆՈՒՍ (լատ.՝ sinus), *եռանկյունաչափական ֆունկցիաներից* (Sin):

ՍԻՆՈՒՍԱՅԻՆ ՔԱՆՈՆ, հորիզոն. հարթության նկատմամբ թեքության անկյունների ճշգրիտ չափման և դետալները տրված α անկյան տակ տեղադրման գործիք, b = l sinα, որտեղ l–ը հոլովակների կենտրոնների միջև եղած հեռ–յունն է:



Սինուսային քանոնով չափման սխեմա.
1. սինուսային քանոն, 2. նույն տրամաչափի ճշգրիտ հոլովակներ, 3. b չափի չափիչ սալիկների հավաքածու

ՍԻՆՈՒՍԻՏՆԵՐ (լատ.՝ sinus – ծոց), **ծոցաորրեր**, քթի հավելյալ ծոցերի լորձաթաղանթի, երբեմն նաև ոսկրային պատի բորբոքում [վերին ծնոտայինը (հայմորիտ), ճակատայինը (ֆրոնտիտ), հիմնականը (սֆենոիդ), մաղոսկրայինը (էթմոիդիտ) ևն]: Ընդհ. ախտանշանները՝ գլխացավ, առատ արտադր–յուն քթից, շնչառության դժվարացում:

ՍԻՆՈՒՍՆԵՐԻ ԹԵՈՐԵՄ, եռանկյունաչափության թեորեմ. սահմանում է կամայական եռանկյան a, b, c կողմերի և դրանց հանդիպակաց A, B, C անկյունների սինուսների հարաբերությունները՝

$$\frac{a}{\sin A} = \frac{b}{\sin B} = \frac{c}{\sin C} = 2R,$$

որտեղ R–ը տվյալ եռանկյանն արտագծված շրջանագծի շառավիղն է:

ՍԻՆՈՒՍՈԻԴ, հարթ կոր, y = sinx ֆունկցիայի գրաֆիկը: Տես *Եռանկյունաչափական ֆունկցիաներ*:

ՍԻՆԴԼԵՐ (Sinclair) Էփթոն Բիլլ (1878–1968), ամերիկացի գրող, հրապարակախոս: Ոչ բռնի սոցիալիզմի գաղափարախոսության կողմնակից: Վավերագր. և հրապարակախոս. առանձնահատկություններով աչքի ընկնող «սոցիոլոգիական վեպերում» («Ջունգլի», 1905, «Ածուխ Արքան», 1917, «Ջիմի Հիգինս», 1919, «Նավթ», 1927) քննադատել է «խոշոր բիզնեսը»: 1930–40–ական թթ–ի գործերում («Երկու աշխարհների միջև», 1941, «Վիշապի ատամները», 1942) առավելապես ուժեղացել են ազատ–պահպանող. միտումները:

ՍԻՆԵՔՐՈՏՐՈՆ, լիցքավորված մասնիկների օղակաձև արագացուցիչ՝ ինչպես թեթև (էլեկտրոններ ու պոզիտրոններ), այնպես էլ ծանր (պրոտոններ, հակապրոտոններ, իոններ) մասնիկների համար, որի մագնիս. դաշտն արագացման ցիկլի ընթացքում փոխվում է, իսկ մասնիկի հավասարակշռ. ուղեծրի շառավիղը մնում է հաստատուն: Էլեկտրոն. Ս–ում արագացնող դաշտի հաճախությունը չի փոփոխվում, իսկ պրոտոն. Ս–ում (նախկինում՝ սինքրոֆազատրոն) փոփոխվում է մագնիս. ինդուկցիայի փոփոխության հետ և համապատասխանեցվում մասնիկների պտույտի հաճախությանը: Էլեկտրոն. Ս–ում էլեկտրոնների էներգիան կարող է հասնել 100 ԳէՎ–ի, ավելին ստանալ դժվար է՝ Ս–ային ճառագայթման կորուստների հետևանքով: Պրոտոն. Ս. պրոտոնները կարող է արագացնել մինչև տասնյակ *ՏէՎ*:

ՍԻՆՕՔՍԱԼ («սինթեզ», «օքսիդ» և «ալյումին» բառերի սկզբնամասերից), լավ ջերմամեկ. և դիէլեկտրիկ. հատկություններով խեցեգործ. շինանյութ է՝ ալյումինի օքսիդի հիմքի վրա: Կիրառվում է որպես բարձրջերմաստիճան. դիէլեկտրիկ (նաշ–ների վառոցքի մոմեր) և որպես կառուցվածք. նյութ.՝ մեքենաշինության դետալների համար:

ՍԻՈՆ, բլուր Երուսաղեմում, որի վրա եղել են տաճար, Դավթի և Հրեաստանի այլ թագավորների դամբարանները: Հետագայում այն հրեաների համար դարձել է Երուսաղեմի և Ավետյաց երկրի խորհրդանիշը: Դեպի Ս. դարձի գաղափարախոսությունը հայտնի է որպես *սիոնիզմ*:

«ՍԻՈՆ», կրոն., պատմաբանասիր., գր. ամսագիր (1866–ից, Երուսաղեմ, 1878–1927–ին ընդհատվել է): Երուսաղեմի հայոց պատրիարքության պաշտոնաթերթը: Խմբ–ներ՝ Տիգրան Սավալանյան (հիմնադիր), Մելքիսեդեկ վրդ. Մուրադյան, Կյուրեղ վրդ. Սրապյան, Սահակ վրդ. Խապայան, 1927–ից՝ Բաբկեն արք. Կյուլեսերյան, Տիրան վրդ. Ներսոյան, Թորգոմ արք. Գուշակյան, Շնորք արք. Գալուստյան, Արա Գալաճյան, Եղիշե արք. Տերտերյան (Եղիվարդ), Թորգոմ արք. Մանուկյան, Նուրհան արք. Մանուկյան (2012–ից):

ՍԻՈՆ Ա. ԲԱՎԱՆԵՑԻ (ծ. թ. անհտ–775), Հայոց կաթողիկոս՝ 767–ից: Եղել է Աղձնիքի եպս–ը: Կաթողիկոս է ընտրվել արաբ ոստիկան Սուլեյմանի հավանությամբ: Նախաձեռնել է *Դարպավի եկեղեցական ժողովը* (768):

ՍԻՈՆԻԶՄ (Երուսաղեմի *Սիոն* բլրի անունով), գաղափարախոսություն, ուղղված է հրեաների ազգ. ինքնագիտակցության վերածննդին, խրախուսման միջոցով նրանց ներգաղթին *Պաղեստին* և այնտեղ «հրեական պետության» ստեղծմանը, 1948–ից հետո Իսրայելին համաշխ. քաղ. աջակցություն ցույց տալու խնդրին: Ներառում է մի շարք հոսանքներ՝ սոց–ից և լիբերալից մինչև ազգայնամոլական: Սիոնիստ. կազմ–յուններ են գործում բազմաթիվ երկրներում, առաջնատարը՝ Համաշխ. սիոնիստ. կազմ–յունն է (1897–ից):

ՍԻՉՈՒԱՆ, նինզ Հվ–արմ. Չինաստանի Յանցզի գետի հոսանքի ավազանում: Տարածքը՝ 491 հզ. *կմ*^{2}, բն.՝ 80,4 մլն (2010): Տարածքի մեծ մասն զբաղեցնում է *Սիչուանի գոգավորությունը*, արմ. մասը՝ Սինո–Տիբեթական լ–ները: Արդյունահանում են քարածուխ, երկաթի հանքանյութ, քարաղ, ֆոսֆատներ, ասբեստ, նավթ և գազ:

ՍԻՉՈՒԱՆԻ ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, **կարմիր ավազան**, միջլեռն. իջվածք Չինաստանում՝ Յանցզի գետի միջին հոսանքի և նրա վտակների՝ Մինցյանի ու Ցզյալինցյանի ավազանում: Տարածքը՝ 200 հզ. *կմ*^{2}: Կազմված է կարմիր ավազաքարերից (այստեղից՝ Կարմիր ավազան անունը): Բարձր.՝ 400–500 *մ*, ծայրամասում՝ մինչև 1000 *մ*: Տիրապետում են բլուրները (բարձր.՝ 50–100 *մ*): Լեռների ստորին գոտում կան կաղնուտներ, 2000 *մ*–ից բարձր՝ ասեղնատերևներ:

ՍԻՊԵՆԵՐ, *գլխոտանիների* դասի փափկամարմինների կարգ: Երկ.՝ մինչև 50 *սմ*: Հայտնի է ավելի քան 150 տեսակ, որից մոտ 90–ը՝ սեպիա սեռում: Ապրում են հիմնականում արևադարձ. և մերձարևադարձ. ծովերի առափնյա ջրերում: Վտանգի դեպքում թանաքագեղձերից արտազատում են հեղուկի ամպիկ (սեպիա): Միջերկրածով. Ս. արդյունագործ. տեսակ է, միսն ուտելի է, ներքին խեցին (ոսկրը) օգտագործվում է մետաղները հղկելու, փայտը ողորկելու համար և օծանելիքի արտադր–յան մեջ:

ՍԻՊԻԼ, (Զաբել Հովհաննեսի Խանջյան, Զապել Ասատուր, Տոնելյան, 1863–1934), գրող, խմբ., մանկավարժ: 1898–ին Գրիգոր *Զոհրապի* և ամուսնու՝ Հրանդ *Ասատուրի* հետ վերահրատարակել է «Մասիս» հանդեսը: Հեղինակ է «Ցոլքեր» (1902) բանաստեղծությունների, «Կնոջ հոգիներ» (1925) պատմվածքների ժողովների, «Աղջկան մը սիրտը» (1891) վեպի, մանկ. բանաստեղծությունների, մանկավարժ–մեթոդ. հոդվածների:

ՍԻՊԻԼՅԱՆ Կղեմես (Մկրտիչ, 1824–1878), դրամագետ: ՎննՄՄ անդամ (1842–ից):

Հավաքել և ուսումնասիրել է հայկ. դրամներ, դրամագիտ. նյութեր, այլ հնություններ: Հիմն. աշխ–ը՝ «Դասաւորութիւն ռուբէնեան դրամոց» (1892), հեղինակ է նաև դրամագիտ., աշխարհագր. ու պատմ. այլ հրապարակումների:

ՍԻՌՈՄՅԱՏՆԻԿՈՎ, Սերգեյ Պետրովիչ (1891–1951), ռուս ճարտարագետ–ջերմատեխնիկ, շոգեքարշաշինության բնագավառի գիտնական: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1943): ՌԽՖՍՀ գիտ և տեխ. վաստ. գործիչ (1943): Շոգեքարշների գլխ. փորձագետ: Շոգեքարշների գիտ. նախագծման հիմնադիրը, մշակել է ջերմ. շարժընթացների հաշվարկն ու տեսությունը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943):

ՍԻՍ, Փոքր Մասիս, Մասիսի երկու գագաթներից մեկը: Բարձր.՝ 3925 *մ:* Անվանվել է նաև Փոքր Արարատ: Ունի հրաբխային ծագում և կառուցվածքով նման է Մեծ Մասիսին: Վերջինից բաժանված է Անահատական լ–անցքով:

ՍԻՍ, Սիսուան, ք. Դաշտ. Կիլիկիայում՝ Պյուռամոսի (Ջիհուն) Սիս կամ Սուարան վտակի ափին՝ Սիս լ–ան հս–արլ. լանջին ու ստորոտին:

Սիսան կամ Սիսիա անվանաձևերով առաջին անգամ հիշատակվում է V–VI դդ–ի բյուզ. և լատ. աղբյուրներում: Արաբ. աշխարհագիրների վկայությամբ՝ VIII–IX դդ–ում Ս–ում հիմնականում բնակվել են հայեր: Հռոմկլայի գրավումից (1292) հետո այն դարձել է Հայոց ընդհանր. կաթողիկոսության (1293–1441), այնուհետև՝ Կիլիկիայի հայոց կաթողիկոսության աթոռանիստ կենտրոնը: Միջնադար. հայ դպրության և երաժշտագիտ–յան կենտրոն Դրազարկի վանքից բացի՝ Ս–ի մերձակայքում հիշատակվում են նաև Տեր Պողոսի վանքը և գրչության կենտրոն Մենծարի (Մենծայր) վանքը:

Ս. եղել է համահայկ. մշակույթի խոշորագույն կենտրոն, որտեղ կորստից փրկվել են բազմահազար ձեռագրեր, թարգմանել համաշխ. (հուն., լատ., ասոր., արաբ. ևն) գիտ. ու գր. արժեքավոր երկեր: Ս. հռչակվել է մասնագիտացված բարձրագույն դպրոցներով (վարդապետարան–համալսարաններ)՝ հատկապես՝ *Ներսես Լամբրոնացու* հիմնադրած աշխարհիկ համալսարանով:

1266, 1275 և 1369–ի անհաջող գրոհներից հետո 1375–ին Եգիպտոսի սուլթանությունը գրավել է բերդը: Ս–ի անկումը հայ պատմիչները գնահատել են որպես հայկ. պետականության կորուստ: XIX դ–ի վերջին և XX դ–ի սկզբին Ս. եղել է Ադանայի վիլայեթի Կոզանի գավ–ի կենտրոնը, ունեցել մոտ 10 հզ. հայ բն.: Զբաղվել են արհեստներով, առևտրով և երկրագործությամբ:

Ս–ի հայ բնակչությունը բռնությամբ տեղահանվել է Մեծ եղեռնի ժամանակ. մեծ մասը զոհվել է աքսորի ճանապարհին, փրկվածներն ապաստանել են հարևան արաբ. երկրներում: 1918–19–ին մոտ 500 սսեցիներ վերադարձել են իրենց հայրենի տները: Սակայն 1920–ի մայիսի 30–ին ստորագրված թուրք–ֆրանս. զինադադարից հետո (Ս. հանձնվել է քեմալ. Թուրքիային) նոր կոտորածից խուսափելու համար նրանք ապաստանել են տարբեր երկրներում:

«ՍԻՍ ՆԱՏՈՒՐԱԼ» ՓԲԸ, բնական հյութերի, պահածոների արտադր–յան ընկ. ՀՀ–ում: Հիմնադրվել է 2000–ին:

ՍԻՍԱԿ, *Սյունիք* կամ Սիսական նահանգ–ի ավանդ. անվանադիր նախնին, *Հայկի* թոռը, *Գեղամի* որդին: Ըստ ավանդության՝ Սևանա (Գեղամա) լճի ավազանում հաստատված Գեղամն իր որդի Ս–ին ժառանգություն է թողել Գեղամա ծովակից մինչև Երասխ ընկած երկրամասը: Մեծ Հայքի թագավորության հս–արլ–ում բյուրապետ կուսակալ է նշանակել Ս–ի շառավիղ Առանին:

ՍԻՍԱԿԱՊԱՐ, լ–գագաթ Զանգեզուրի լ–շղթայի հվ. մասում՝ ՀՀ Սյունիքի մարզի ու Նախիջևանի ԻՀ սահմանին: Բարձր.՝ 3826 *մ*:

ՍԻՍԱԿՅԱՆ Ալեքսեյ Նորայրի (1944–2010), ֆիզիկոս–տեսաբան: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1980), պրոֆ. (1986), ԵՊՀ պատվ. դ–ր (2005): ՌԳԱ ակադ. (2008, թղթ. անդամ՝ 2006–ից), ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (2005): Նորայր *Սիսակյանի* որդին, Իոսիֆ *Սիսակյանի* եղբայրը: Միջուկ. հետազոտությունների միացյալ ինստ–ի (Դուբնա) տնօրեն (2006–10): Հետազոտել է բարձր էներգիայով մասնիկների բազմակի առաջացումը, քվարկ–հադրոնային նյութի առաջացման շարժընթացները:

ՌԴ Ճարտարագիտ. (1998), Բնական (1994), Եվրոպ. (Բրյուսել, 2003) ԳԱ–ների անդամ: Աշտարակի պատվ. քաղաքացի (2005):

ՀամԼԿԵՄ մրց. (1973), ՌԴ Բարեկամության (1995), «Պատվո նշան» (2005), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 4–րդ աստիճանի (2010) շքանշաններ, ՀՀ «Անանիա Շիրակացի» մեդալ (2005):

ՍԻՍԱԿՅԱՆ Իոսիֆ Նորայրի (1938–1995), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1982): Նորայր *Սիսակյանի* որդին, Ալեքսեյ *Սիսակյանի* եղբայրը: ՌՃԱ և Նյու Յորքի ԳԱ անդամ: ՌԳԱ եզակի սարքաշինության կենտր. ԿԲ պետ–գլխ. կոնստրուկտոր (1986–95), «Ակադեմսարք» ընկերակցության նախագահ: Աշխ–ները վերաբերում են տարր. մասնիկների ֆիզիկային, լազեր. ֆիզիկային, համակարգչ. օպտիկային: ՌԴ Պետ. մրց. (1992):

ՍԻՍԱԿՅԱՆ Հմայակ Սոսի (ծ. 1969), սրտաբան: Բժշկ. գիտ. դ–ր (2001), պրոֆ. (2003): Սոս *Սիսակյանի* որդին: Աշխ–ները վերաբերում են կարդիոմիոպաթիայի ժամանակ սրտամկանի կառուցվածք. ձևափոխման (վերամոդելավորման) առանձնահատկություններին և սիրտանոթ. համակարգի վրա կենսբ. ակտիվ նյութերի, հորմոն. գործոնների ազդեցությանը: Եվրոպ. սրտաբանների միության աշխ. խորհուրդների անդամ (2001–ից): ԵՊԲՀ ոսկե (2005, 2010), ՀՀ «Մխիթար Հերացի» (2017) մեդալներ: «Նոր հայկական բժշկական հանդես» խմբ–ի տեղակալ (2007–ից):

ՍԻՍԱԿՅԱՆ Նորայր Սարտիրոսի (1907–1966), կենսաքիմիկոս, տիեզ. կենսբ–յան հիմնադիրներից: Կենսբ. գիտ. դ–ր (1940), պրոֆ. (1944): ԽՍՀՄ ԳԱ (1960), ՀԽՍՀ ԳԱ (1965, թղթ. անդամ՝ 1945–ից) ակադ.: Ալեքսեյ և Իոսիֆ *Սիսակյանների* հայրը: 1959–63–ին՝ ԽՍՀՄ ԳԱ կենսբ. բաժանմունքի ակադ. քարտուղար, 1963–66–ին՝ գլխ. գիտ. քարտուղար: Ուսումնասիրել է ռադիոակտիվ ճառագայթների ազդեցությունը կենդանի բջիջների, ենթաբջջ. կառուցվածքների և ֆերմենտ. համակարգի վրա: Զբաղվել է տեխ. կենսաքիմիայի հարցերով: Ս–ի ղեկավարությամբ ուսումնասիրվել են անկշռության, Երկրի ձգողականության, ճառագայթման և այլ գործոնների հետ կապված հարցեր: ՅՈՒՆԵՍԿՕ–ի գործադիր խորհրդի անդամ (1959–64), Միջազգ. աստղագնացության ակադ–ի փոխնախագահ (1965–66), խորհրդ. և արտ. մի շարք գիտ. ընկ–ների և խորհուրդների անդամ:

ԽՍՀՄ Պետ. (1952), ԲԳԱ Ա. Բախի (1950, 1966) և Ի. Մեչնիկովի (1951) անվ. մրց–ներ, Լ. Պաստյորի ինստ–ի (Ֆրանսիա), Լիեժի համալսարանի ոսկե մեդալներ, Խաղաղության համաշխ. խորհրդի պատվոգիր և արծաթե մեդալ (1959):

Ս–ի անունով է կոչվել խառնարան Լուսնի վրա, նրա անունը ոսկե տառերով է գրված ՅՈՒՆԵՍԿՕ–ի շենքի պատին:

ՍԻՍԱԿՅԱՆ Սոս Հմայակի (ծ. 1936), բժիշկ–կենսաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1986), պրոֆ. (1987): Հմայակ *Սիսակյանի* հայրը: Աշխ–ները վերաբերում են փորձարար. պայմաններում սրտամկանի ինֆարկտի ժամանակ արյան մազանոթ. համակարգում տեղի ունեցող փոփոխություններին: Մշակել և ներդրել է արյան մազանոթ. համակարգի մանրադիտակ. հետազոտման և ֆունկցիոնալ վիճակի ուսումնասիրման մեթոդ:

ՍԻՍԵՌ (Cicer), բակլազգիների (թիթեռնածաղկավորներ) ընտանիքի միամյա կամ բազմամյա խոտաբույսերի ցեղ: Պարենն. բույս է, հատիկից ստանում են ձավար, ալյուր: Հայտնի է 30–ից ավելի տեսակ, ՀՀ–ում՝ Վայոց ձորի, Սյունիքի մարզերում, մշակում են չոր նախալեռն. և լեռն. գոտիներում: Ս–ի շատ փոքրիկ և անատոլիական տեսակները գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

ՍԻՍԻԱՆ, գետ ՀՀ Սյունիքի մարզում, Որոտանի աջ վտակը: Երկ.՝ 33 *կմ*, ավազանը՝ 385 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 3,88 *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Զանգեզուրի լ–շղթայի հս–արլ. լանջից՝ մոտ 3100 *մ* բարձր–ից: Ս–ի վրա է Տոլորսի ջրամբարը:

ՍԻՍԻԱՆ (մինչև 1935–ը՝ Ղարաքիլիսա, 1935–40–ին՝ Սիսավան), ք. ՀՀ Սյունիքի մարզում՝ Որոտանի ափին՝ Երևանից 217 *կմ* հեռ–յան վրա: Բն.՝ 14,9 հզ. (2003): Կան թեթև, շինանյութերի, սննդի արդ–յան և այլ ձեռն–ներ: Ունի պատմության թանգարան: Շրջակայքում կան հնագիտ. հուշարձաններ՝ դամբարանադաշտեր, բնակատեղիներ, որոնցից նշանավոր են «Զորաքարը» («Զորաց դաշտ», մ. թ. ա. VII հզ–ամյակ) և «Երիվարաց դաշտ» ամրոցբնակատեղին (ավերակները պահպանվում են): Ս–ի տարածքում է Սիսավանի եկեղեցին (VII դ.):

ՍԻՍԻԱՆԻ ԼԵՌՆԱՆՑՔ, ՀՀ Սյունիքի մարզում՝ Զանգեզուրի լ–շղթայի հս. մասում՝ 2345 *մ* բարձր–յան վրա: Միացնում է Որոտանի և Նախիջևանի գետահովիտները: Հսում կոչվել է Մայրադուրք:

ՍԻՍԻԱՆԻ ՊԱՏՄԱԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ, հիմնադրվել է 1989–ին՝ որպես ՀՊԹ–ի մասնաճյուղ (1993–ից՝ ինքնուրույն թանգարան): Պահվում են միայն Սիսիանի տարածաշրջանը ներկայացնող մշակութ. արժեքներ, ունի հնագիտ–յան, ազգագրության (գորգեր, ձեռագործ, կենց. իրեր, դրամներ, լուսանկարներ, փաստաթղթեր ևն) բաժիններ, մշտ. ցուցադրություն:

ՍԻՍԼԵՅ (Sisley) Ալֆրեդ (1839–1899), ֆրանսիացի գեղանկարիչ: Իմպրեսիոնիզմի առաջատար վարպետներից (ծագումով՝ անգլիացի): Ս–ի բնանկարներին բնորոշ են քնարականությունը, զուսպ, միաժամա–

նակ՝ նուրբ ու թեթև լուսավոր գուներանգը («Դյուդ Սենայի ափին», 1872, «Սառնամանիք Լուվեսիենում», 1873):

ՍԻՄԿԱՏԱՐ, լ–գազաթ ՀՀ Սյունիքի մարզում՝ Զանգեզուրի լ–շղթայի հս. մասում: Բարձր.՝ 3093 *մ*: Բուսածածկույթը լ–տունդրային է: Տեղ–տեղ պահպանվում են ձնաբծեր:

ՍԻՄՄՈՆԴԻ (Sismondi) Սիմոնդ դե Ժան Շառլ Լեոնար (1773–1842), շվեյցարացի տնտեսագետ և պատմաբան: Քաղտնտ–յան հիմնադիրներից: Գլխ. աշխ–ը՝ «Քաղաքատնտեսության նոր սկզբունքները» (հ. 1–2, 1819): Իդեալ. տնտ. համակարգ է համարել մանրապրանք. տնտ–յունը: Հանդես է եկել առաջընթացի արգելակման նպատակով տնտ–յան մեջ պետության ակտիվ միջամտության օգտին:

ՍԻՍՎԱՆ (Բեքմեզյան) Գրիգոր Հովհաննեսի (1918–1972), արձակագիր, խմբ.: 1945–47–ին՝ *«Նոր ուղի»* պարբ–ի խմբ.: 1947–ին հայրենադարձել է: Հեղինակ է «Իրականացած երազ» (1949), «Հայրենի տուն» (1957) գրքերի:

ՍԻՍՏԱՆ, անապատ. հարթավայր Իրանում և Աֆղանստանում: Բարձր.՝ 500 *մ*: Կտրատվում է Հիլմենդ, Ֆարախրուդ, Հաշրուդ գետերի ստորին ավազաններով:

ՍԻՍՏՈԼԱ, (հուն.՝ systole – կծկում), սրտի նախասրտերի և փորոքների կծկումը, երբ արյունը մղվում է զարկերակների մեջ: Նախասրտերի և փորոքների *դիաստոլա–յի* հետ կազմում է սրտի գործունեության բոլորաշրջանը (ցիկլ):

ՍԻՍՏՈԼԱՅԻՆ ՃՆՇՈՒՄ, զարկերակ. ճնշումն անոթազարկ. ալիքի առավելագույն բարձրացման պահին, որը հետևում է ձախ փորոքի սիստոլային: Ս. ճ–ման փոփոխությունները բնորոշ են հիպերտոնիային, կոլապսին և այլ հիվանդագին վիճակների:

«ՍԻՍՄԱՆ», ազգ., գր–բանասիր. ամսաթերթ (1905, Ալեքսանդրիա): Խմբ–ներ՝ Սմբատ Բյուրատ, Երվանդ Սրմաքեշխանլյան (Երուխան):

«ՍԻՍՄԱՆ», գր., հաս. շաբաթաթերթ (1918–20, Ֆրեզնո): «Սիսուան» հրտչ. ընկ–յան հրտ–յուն: Խմբ.՝ Միքայել Մինասյան: 1920–ին միացել է «Նոր կեանք» (1914–19, Ֆրեզնո) շաբաթաթերթին և կոչվել «Նոր կեանք–Սիսուան» (1920–21):

ՍԻՎԱԼԻԿ, Հիմալայների հվ.՝ առավել ցածր հատվածը Հնդկաստանում և Նեպալում: Երկ.՝ մոտ 1700 *կմ*, բարձր.՝ մինչև 3647 *մ*: Ս. առանձնացված է Մեծ Հիմալայներից լայնարձակ հարթավայրերով: Խորը մասնատված է: Ծածկված է արևադարձ. անտառներով, ստորոտին կա ճահճացած ջունգլի (տերաի):

ՍԻՎԱՇ (թուրք. –նեխած ծով), մանր ծոցերի համակարգ Ազովի ծովի արմ. ափին՝ Ղրիմում: Ազովի ծովից բաժանված է ավազ. (270 *մ*–8 *կմ* լայն–յան) Արաբաթյան Սլաք ցամաքալեզվակով: Տարածքը՝ 2560 *կմ*²: Ծովին միացած է Գենիչեսկի նեղուցով: Ջրերը խիստ հանքայնացված են:

ՍԻՎԻԿՅԱՆ Սերգեյ Արմենակի (1925–1971), Փառքի 3 աստիճանների շքանշանների ասպետ (1943, երկուսը՝ 1945), ավագ սերժանտ: ՀՄՊ–ին մասնակցել է 1943–ից: Շքանշանների արժանացել է Ուկրաինայի ազատագրման և Դնեստրի ափին ռազմահենակետի ստեղծման ժամանակ ցուցաբերած խիզախության համար:

ՍԻՎԿՈՎ, Գրիգորի Ֆյեգոնտովիչ (1921–2009), ռուս օդաչու, ավիացիայի գեն–մայոր (1975): ԽՄ հերոս (1944, 1945): ՀՄՊ–ի ժամանակ եղել է գրոհիչ ավիացիայում՝ էսկադրիլիայի հրամ. և գնդի շտուրման: Կատարել է 247 մարտ. թռիչք:

ՍԻՎԼՐԻՀԻՍԱՐ, հնում՝ **Թալիա, Հուստինիանուպոլիս**, ք. Թուրքիայում: Հիմնադրել է Բյուզանդիայի ***Հուստինիանոս I*** կայսրը: Թուրք. «Ս.» անվանումը (նշանակում է սրածայր բերդ) ստացել է պահպանված բյուզ. ավերակ բերդից: Ս–ում հայերը հաստատվել են դեռևս բյուզ. տիրապետության ժամանակաշրջանում: Հայկ. կազմակերպված համայնքի մասին առաջին տեղեկությունները XVII դ–ից են: XIX դ–ի կեսին Ս. ունեցել է 4 հզ., 1874–ին՝ 5250 (750 տուն), 1890–ին՝ մոտ 6000 (800 տուն) հայ բն., 1914–ին՝ մոտ 850 տուն: Բռնի տեղահանվել են Մեծ եղեռնի ժամանակ: 1918–ին Ս. վերադարձած 200–250 հայ ընտանիքները թուրք. կառ–յան նոր հալածանքների հետևանքով ստիպված հեռացել են, և 1920–ին հայկ. գաղութը վերջնականապես քայքայվել է:

ՍԻՎԼՐԻՀԻՍԱՐԻ ԲԱՐԲԱՌ, հայ–ի «կը» ճյուղի բարբառ: Խոսվել է Անատոլիա վիլայեթի Սիվրիհիսար ք–ում: Ունի երկաստիճան ձայնեղազուրկ (պ–փ) բաղաձայն. համակարգ:

ՍԻՎՈՒՀ (Eumetopias jubatus), ականջավոր փոկերի ընտանիքի ծով. կաթնասուն: Երկ.՝ մինչև 3,85 *կմ*, կ. զ.՝ 700–800 *կգ* (էգերը զգալի փոքր են): Ապրում է Խաղաղ օվկ–ի հս. մասում, Ռուսաստանում հիմն. մակաղատեղը՝ Ճապոն. ծովից մինչև Բերինգի նեղուց: Սակավաթիվ է, պահպանվում է:

ՍԻՏԱԼ (Շահինյան) Կարապետ Շահենի (1891–1972), բանաստեղծ, խմբ., հրապարակախոս: 1914–ից՝ ԱՄՆ–ում: Հիմնադրել է տպարան (գործել է շուրջ 40 տարի), 1923–24–ին՝ «Հորիզոն» շաբաթաթերթի (Փ. Մինասյանի և Հ. Հովսեփյանի հետ) խմբ.: Հեղինակ է «Գուսաներգեր» (1919), «Գիշերէն մինչև լուսաբաց» (1931), «Ոսկե հունձ» (1962) բանաստեղծությունների ու պոեմների ժող–ների, «Սասնայ ծռեր» (1939) դյուցազներգության, «Կաշտի քաջեր» (1942) վիպերգի, «Հազարան բլբուլ» (1946) հեքիաթի, «Նոր հորիզոններ» (1959) հրապարակախոս. երկերի:

ՍԻՏԱԼՆԵՐ, մեկ կամ մի քանի բյուրեղ. ֆազերից կազմված, ապակենման ֆազում հավասարաչափ բաշխված ապակեբյուրեղ. նյութեր: Ունեն բարձր ամրություն, կարծրություն, քիմ. և ջերմ. կայունություն, ընդարձակման ցածրջերմաստիճան. գործակից: Տարբերում են տեխ. Ս. (պատրաստված տարբեր քիմ. միացություններից՝ օքսիդներ, աղեր՝ ստացված արհեստ. կոմպոզիցիաների հիմքի վրա), քարասիտալներ (լեռն. ապարներից՝ բազալտներից, դիաբազներից են) և խարամասիտալներ (մետաղագործ. կամ վառելիք. խարամներից): Ս. կիրառում են նաև էլեկտրավակուում. սարքերի հերմետիկացման համար, օպտիկայում ևն:

ՍԻՏԱՐ, հնդկ. լար. կսմիթ. երաժշտ. գործիք՝ *յուրնյայի* տիպի: Օգտագործվել է XIII–XIV դդ–ում հս. հնդկ. երաժշտության մեջ:

ՍԻՏԱՐՅԱՆ Ստեփան Արամայիսի (1930–2009), տնտեսագետ, պետ. գործիչ: Տնտեսագիտ. դ–ր (1966), պրոֆ. (1970): ՌԳԱ ակադ. (1987):1983–ից՝ ԽՍՀՄ պետպլանի նախագահի տեղակալ, 1986–89–ին՝ 1–ին տեղակալ: 1989–ից՝ ԽՍՀՄ ՆԽ նախագահի տեղակալ: 1992–ից՝ ԽՍՀՄ ԳԱ արտաքին տնտ. հետազոտությունների ինստ–ի տնօրեն, 1996–ից՝ Մենեջմենթի միջազգ. ակադ–ի նախագահ: Աշխ–ները վերաբերում են վերարտադր–յան, ազգ. եկամտի ու ֆինանսների տեսությանը: ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան (1976):

ՍԻՏԵՂՆԵՐ (Sittidae), ճնճղուկանմանների կարգի թռչունների ընտանիք: Երկ.՝ 9,5–19 *սմ*, կ. զ.՝ 15–40 *գ*: Կառչուն ճանկերով կարճ թաթերը հնարավորություն են տալիս հեշտությամբ տեղաշարժվել, վեր ու վար անել ծառարնի և ժայռերի վրայով: Հայտնի է 25 տեսակ, ՀՀ–ում՝ 4 (սովոր., ժայռ. փոքր, ժայռ. մեծ Ս. և կարմրաթև մագլցող):

ՍԻՏԻՆ Իվան Դմիտրևիչ (1851–1934), ռուս լուսավորիչ, հրտ.: 1876–ին Սոսկվայում հիմնադրել է տպարան (այժմ՝ Առաջին օրինակելի տպարան), 1883–ին՝«Ի. Դ. Սիտին և գործընկերներ» հրտչ. ընկ–ը, որը 1884–ից տպագրել է նաև «Պոսրեդնիկ» հրտչ–յան գրքերը: XX դ–ի սկզբին Ս–ի հրտչ–յունն ամենախոշորն էր Ռուսաստանում:

ՍԻՏՈՐ ՍԻՏՈՒՄՈՐԱՆԳ (Sitor Situmorang, 1924–2014), ինդոնեզացի գրող: Հեղինակ է «Մուտիարա փողոցը» (1954) էկզիստենցիալիստ. պիեսների ժող–ի, «Նոր դար» (1961), «Ճանապարհորդության քարտեզ» (1976) բանաստեղծությունների, պատմվածքների և այլ ժող–ների, հուշագրության (1981): Ազգ. գր. (1955), Ջակարտայի արվ–ների խորհրդի (1976) մրց–ներ:

ՍԻՏՏԵՐ (Sitter) Վիլլեմ դը (1872–1934), նիդեռլանդացի աստղագետ: Աշխ–ները վերաբերում են տիեզերաբանությանը (կոսմոլոգիա): Տիեզերքի առաջին ռելյատիվիստ. մոդելի հեղինակն է: Կատարել է աստղագիտ. հաստատունների ընդհ. հետազոտություն՝ դրանք միմյանց հետ համաձայնեցնելու համար: Մշակել է Յուպիտերի արբանյակների պտտման տեսությունը:

ՍԻՏՈՒԽ, ք. Մյանմայում, Ռակհայն (Արական) մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 222,8 հզ. (2010): Նվինգստ՝ Կալադան գետի (Բենգալյան ծոց) ափին: Կան բրնձազտիչ, փայտասղոցման, լուցկու արտադր–յան ձեռնարկներ, Ս–ից հվ՝ նավթադրդյունահանում:

ՍԻՐԱԴԵՂՅԱՆ Վանո Սմբատի (ծ. 1946), գրող, քաղ., պետ. գործիչ: 1988–ին ձերբակալվել է «Ղարաբաղ» կոմիտեի անդամ լինելու մեղադրանքով: 1991 և 1997–2000–ին՝ ՀՀՇ կուս–յան նախագահ, 1992–96–ին՝ ՀՀ ՆԳՆ նախարար, 1996–98–ին՝ Երևանի քաղաքապետ: Հեղինակ է «Կիրակի» (1983), «Ծանր լույս» (1987), «Շատ չհամարվի» (1993), «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» (2000) պատմվածքների ժող–ների: 2000–ին հեռացել է Հայաստանից:

ՍԻՐԱԿԱՆՅԱՆ Սամվել Նապոլեոնի (ծ. 1961), քիմիկոս–օրգանիկ: Քիմ. գիտ. դ–ր (2015): Հայտնաբերել է կենսաբանորեն ակտիվ համակցված տարացիկլիկ միացությունների նոր վերախմբավորումներ:

ՄՊՀ Ա. Ն. Կոստի անվ. ոսկե մեդալ (2015):

ՍԻՐԱԿՅՈՒՍ (Syracuse), ք. ԱՄՆ Նյու Յորքի նահ–ում: Բն.՝ 136 հզ. (արվարձաններով՝ 710 հզ., 2010): Տրանսպորտ. հանգույց է, ունի օդանավակայան: Կան դեղագործ., սննդի ձեռն–ներ:

ՍԻՐԱԿՈՒԶԱ (Siracusa), ք–նվինգստ Իտալիայի Սիցիլիա կղզում, համանուն պրո–

վինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 121 հզ. (2010): Հիմնադրվել է հնագույն Սիրակուսե ք–ի տեղում: *Արքիմեդի* հայրենիքն է: Պահպանվել են հին կառույցների՝ Ապոլոնի և Աթենասի դորիական տաճարների (մ. թ. ա VI–V դդ.), թատրոնի (մ. թ. ա. V դ.) մնացորդներ: Կա հնագիտ. թանգարան:

ՍԻՐԱՄԱՐԳ (Pavo), համաստեղություն երկնքի Հվ. կիսագնդում՝ Հեռադիտակ, Ջոհասեղան, Դրախտ. Թռչուն, Օկտանտ և Հնդիկ համաստեղությունների միջև: Ամենապայծառ աստղը 2 *ա. մ.* է:

ՍԻՐԱՄԱՐԳԱԿՆԵՐ (Saturnidae, Attacidae), գիշեր. թիթեռների ընտանիք: Թևերի բացվածքը՝ 7,5–20 *սմ*: Թևերի կենտրոնում կան 1-ական խոշոր, բազմերանգ, աչքանման, սիրամարգի փետուրի նման (այստեղից՝ անվանումը) բծեր: Հայտնի է 1200 տեսակ, ՀՀ–ում՝ 5 (գալերոպա, պերիսոմենա, զիվանի, սալորենու և գիշեր. մեծ Ս.): Վերջինս Եվրոպայի և ՀՀ ամենամեծ թիթեռն է. պտղատու ծառերի 2–րդային վնասատու է: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՍԻՐԱՄԱՐԳԵՐ (Pavo), փասիանների ընտանիքի թռչունների սեռ: Հայտնի է 2 տեսակ՝ Հվ. Ասիայի, Շրի Լանկայի և Սումատրա կղզիների անտառներում: Սովոր. Ս–ի արուի մարմնի երկ.՝ 100–125 *սմ*, պոչինը՝ 40–45 *սմ*, վերնապոչի փետուրներինը (սխալմամբ ընդունել են որպես պոչ)՝ 120–130 սմ: Գեղազարդիչ թռչուն է. Հնդկաստանում կիսաընտելացված է: Գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում: XX դ–ի սկզբին Կոնգոյի ավազանում հայտնաբերվել և նկարագրվել է աֆրիկ. Ս.:

ՍԻՐԱՆԵՎ, XIII դ–ի ճարտ.: Վայոց ձորում կառուցել է Արատեսի վանքի գմբեթավոր եկեղեցու փոխհատվող կամարներով գավիթը (1265), Նորավանքում՝ իշխանաց իշխան Սմբատ Օրբելյանի գերեզմանի վրա՝ թաղածածկ Սբ Գրիգոր եկեղեցի–դամբարանը (1274), բնակելի շենքեր և մատուռ՝ Հալիձոր գ–ի մոտակայքում: Պահպանվել է Ամաղուում ծնողների հիշատակին կանգնեցված խաչքարը (եղբոր՝ Իզարմելի հետ):

ՍԻՐԱՆՈ ԴԸ ԲԵՐԺԵՐԱԿ (Cyrano de Berjerac) Սավիեն (1619–1655), ֆրանսիացի գրող, ազատախոհ: Հեղինակ է «Նամակներ» պամֆլետների, «Խրատված տառակերը» կատակերգության, «Ագրիպինայի մահը» ողբերգության (ամփոփված են «Տարբեր երկեր»–ում, 1654), «Այլ աշխարհ կամ Լուսնի պետություններն ու կայսրությունները» (1657), «Արևի պետություններն ու կայսրությունները» (հրտ.՝ 1662) փիլ., ուտոպիստ. վեպերի, նաև բուռլեսկների, պիեսների: Ս. դը Բ–ի կերպարը մարմնավորված է Է. Ռոստանի «Սիրանո դը Բերժըրակ» (1898, հայ.՝ 1951) պիեսում:

ՍԻՐԱՆՈՒՅՇ (Գանթարճյան Մերոպե Սահակի, 1857, այլ տվյալներով՝ 1862–1932), դերասանուհի: 1873–ից՝ *«Արևելյան թատրոնի»*, 1874–ից՝ Հակոբ *Վարդովյանի* թատրոնի, 1878–ին՝ Սերովբե Պենկլյանի օպերետ. խմբի դերասանուհի և երգչուհի: Անձնավորել է շուրջ 300 դեր (Օֆելյա՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», Մարգարիտ Գոթիե՝ Դյումա–որդու «Կամելիազարդ տիկինը», Թերեզա՝ Մ. Կամոլետտիի «Քույր Թերեզա», Ռուզան՝ Սուրացանի «Ռուզան», Իշխանուհի՝ Լ. Շաթի «Հին աստվածներ», Ֆաթիմե՝ Տ. Չուխաճյանի «Լերլերիջի Հոր–հոր աղա», ևն): Անսովոր իրադարձություն էր Համլետի (Վ. Շեքսպիրի «Համլետ», Թիֆլիս, 1901)՝ Ս–ի դերակատարումը:

ՍԻՐԱՍ Համայակ Սահակի (Ոսկանյան, 1902–1983), գրող, խմբ.: ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1968): 1927–28, 1933–ին՝ «Բանվոր» թերթի, 1938–39 և 1954–57–ին՝ «Խորհրդային գրականություն» ամսագրի խմբ., 1939–41 և 1946–48–ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար: Հեղինակ է «Կյանքի կարոտ» (1934) պատմվածքների և ավանդազրույցների ժող–ի, «Մամենն ու Աշեն» (1934), «Ամար» (1936) և այլ պատմվածքների, «Անահիտ» (1940), «Արարատ» (1950) վեպերի, «Սասունցի Դավիթ» (1939) դյուցազնավեպի, «Հայրենի աշխարհ» (1974) պատմավեպի, «Ժամանակի հանգույցներում» (1982) ինքնակենսագր. ասք–վիպասանության, «Քսանմեկ տարի Ավետիք Իսահակյանի հետ» (1984) հուշագրության: Հայ. է թարգմանել ֆինն. «Կալևալա» (1972) էպոսը:

ՍԻՐԱՎՅԱՆ Հենրիկ Նիկոլայի (1928–2001), նկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (1977): Գործերից են՝ «Կոմիտաս» (1960, եռապատկեր), «Անի քաղաքը» (1968), «Վիլյամ Սարոյան» (1982), «Հայ ժողովրդական երգը» (1985–87, որմնանկար), «Գրիգոր Լուսավորչի տեսիլքը» (1998), «Գառնիի ձորը» (2000) ևն: Ձևավորել է Հայաստանի առևտրաարդ. ցուցահանդեսներ (Բարսելոնում, Մոնրեալում, Դելիում և այլուր, 1974–86), Ա. Տիգրանյանի «Դավթ Բեկ» օպերան (1982, ԵՕԲԹ):

ՍԻՐԱՑԱՐՅԱ, գետ Միջին Ասիայում: Կազմավորվում է Նարին և Կարադարյա գետերի միախառնումից և թափվում Արալի ծովը: Երկ.՝ 2212 *կմ* (Նարինի ակունքներից՝ 3019 *կմ*), ավազանը՝ 219 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը վերին հոսանքում՝ 500 *մ*^{3}/վ: Ջրերն օգտագործում են հիմնականում տնտ.նպատակներով: Ս–ի ավազանում կան մոտ 750 ջրանցք, 61 ջրէկ: Ափերին են Խոջենտ (Տաջիկստան), Կիզիլ–Օրդա (Ղազախստան) ք–ները:

ՍԻՐԱՑԱՐՅԱՅԻ ՎԻԼՈՅԱՏ, վտմ Ուզբեկստանում: Կազմավորվել է 1963–ին: Տարածքը՝ 5,1 հզ. *կմ*^{2}, բն.՝ 777,1 հզ. (2010). ավելի քան 60 %–ը՝ ուզբեկներ, ապրում են նաև ռուսներ և ուր.: Ունի 5 քաղաք և 2 քտա: Վարչ. կենտրոնը՝ Գյուլիստան: Զարգացած գղտ. շրջան է:

ՍԻՐԵՆ (Sirén) Յոհան Սիգֆրիդ (1889–1961), ֆիննական ճարտ.: Նեոկլասիցիզմի ոճով կառուցած շինություններին հատուկ են համաչափությունը, հորինվածքների միաձուլությունը, օրդեր. տարրերի պարզ մեկնաբանությունները (խորհրդարանի շենքը Հելսինկիում, 1927–31):

ՍԻՐԵՆՆԵՐ, կիսաթռչուն–կիսակին էակներ հուն. դից–յան մեջ, որոնք գայթակղել են նավաստիներին իրենց երգով, ապա կործանել նրանց: Փխր. իմաստով՝ գրավիչ գեղեցկուհիներ, որոնք գերում են իրենց ձայնով:

ՍԻՐԵՏ, գետ Ռումինիայում և Ուկրաինայում: Երկ.՝ 726 *կմ*, ավազանը՝ 45 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 185 *մ*^{3}/վ: Ստորին հոսանքում նավարկելի է:

ՍԻՐԵՏ, ք. Ռումինիայի Սուկավա գվո–ում՝ Սիրետ գետի ափին: XIV դ–ում Ս–ում հաստատված հայերն ունեցել են քաղաքապետ, դատարան (առաջնորդվել է Մխիթար Գոշի «Դատաստանագրքով»): XV դ–ում Ս–ում եղել է մոտ 700 հայ, XVIII դ–ում՝ 58, XIX դ–ի սկզբին՝ 10 ընտանիք: Պահպանվել է հայատառ արձանագրություններով 13 տապանաքար, որոնք հայ եկեղեցու և գերեզմանոցի ավերակների հետ պեղվել են 1885–ին:

ՍԻՐԻԱ, Սիրիայի Արաբական Հանրապետություն, պետություն Արմ. Ասիայում: Սահմանակից է Թուրքիային, Իրաքին, Հորդանանին, Իսրայելին և Լիբանանին: Տարածքը՝ 185,2 հզ. *կմ*^{2}, բն.՝ 18,5 մլն (2009): Մայրաքաղաքը՝ *Դամասկոս*: Պետ. լեզուն՝ արաբ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Հավատացյալների մեծ մասը սուննի մահմեդական է: Բաժանված է 14 վարչ. մարզերի (մուհաֆազ): Անդամակցում է ՄԱԿ–ին, ԱՊԼ–ին: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով շուրջ 5 հզ. ԱՄՆ դոլար է (2010): Արտահանում է նավթ և նավթամթերք, մրգեր, բանջարեղեն, հագուստ, կենդանիներ, ցորեն ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, էլեկտրաէներգիա, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ սիրիական ֆունտ:

Վաղ անցյալում Ս–ի տարածքը կազմել է հնագույն Խեթական, Միտաննի, Ասորիք պետության, Նորբաբելոն. թագավորության, Աքեմենյան թագավորության մաս, այնուհետև եղել է Ալեքսանդր Մակեդոնացու կայսրության, ապա՝ Սելևկյան, Հռոմ. և Բյուզ. կայսրությունների կազմերում: VII դ–ում Արաբ. թ–կղզուց այստեղ են ներխուժել արաբները, սկսվել է երկրամասի արաբականացումն ու մահմեդականացումը: XI դ–ում Ս–ի տարածքի մեծ մասը գրավել են սելջուկ. թուրքերը, որոշ շրջաններ՝ խաչակիրները: XII դ–ում Ս–ի զգալի մասին հաջորդաբար տիրել են եգիպտ. մամլուքները և մոնղոլները: 1516–1918–ին երկիրը եղել է Օսմ. կայսրության տիրապետության տակ: 1918–ին արաբ. զորքերը մտել են Դամասկոս և Խան Թումանի ճակատամարտում հաղթելով թուրքերին՝ ազատագրել են Հալեպը: 1920–ին Ս. հռչակվել է անկախ թագավորություն: Սակայն Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան չեն ճանաչել երկրի անկախությունը: Ֆրանսիան ստացել է Ս–ի և Լիբանանի կառավարման մանդատը: 1946–ին սիրիացիներին հաջողվել է երկրից դուրս մղել օտարերկրյա զորքերը: 1956–61–ին Ս. և Եգիպտոսը միացել են և ստեղծել են Միացյալ Արաբ. Հանրապետությունը: 1961–ին Ս. բաժանվել և հռչակել է իր անկախությունը: 1967–ի Վեցօրյա պատերազմում Իսրայելը գրավել է Գոլանի բարձունքը Ս–ից: 1970–ական թթ–ից Ս. որոշակի ռազմ. ներկայություն ուներ Լիբանանում և ակտիվորեն մասնակցում էր մերձավորարլ. հակամարտության կարգավորմանը: 2006–ին Ս–ական զորքերը դուրս են բերվել Լիբանանից: 1963–ից երկրում իշխում է ԲԱԱՍ կամ Արաբ. սոց. վերածնունդ կուս–յունը՝ Հաֆեզ Ասադի գլխավորությամբ: 2011–ին Ս–ում սկսվել է ներքաղ. ճգնաժամ, որը վերածվել է քաղաքաց. պատերազմի: 2013–ին ճգնաժամից թուլացած երկրի տարածքների մի մասն անցել է ինքնահռչակ Իրաքի և Լևանտի իսլամ. պետության (ԻՍՊ) վերահսկողության տակ: Շարունակվող պայքարի գլխ. նպատակն այդ տարածքների ազատագրումն է: Հակամարտության հետևանքով զոհվել է 300–500 հզ. մարդ, 5 մլն սիրիացի լքել է երկիրը:

IV–V դդ–ում շատ հայ երիտասարդներ, այդ թվում՝ Մեսրոպ Մաշտոցը, ուսանել են Ասորիքի քաղաքներում: Հայերի թիվը Ս–ում մեծացել է հատկապես IX–XI դդ–ում, երբ բյուզ. կայսրերն զգալի թվով հայերի գաղթեցրել են, ինչպես նաև Բագրատունիների թագավորության անկման, սելջուկ. թուրքերի ասպատակությունների, իսկ հետագայում նաև Կիլիկյան Հայաստանի անկման հետևանքով: Հայերը բնակություն են հաստատել Դամասկոսում, Փայասում, Ալեքսանդրետում, Հալեպում: Հայերի զանգված. գաղթ դեպի Ս. վերստին ակտիվացել է Մեծ եղեռնից հետո: Ժամանակակից սիրիահայ համայնքը ձևավորվել է 1920–ական թթ–ի սկզբին՝ Արմ. Հայաստանից և Կիլիկիայից գաղթած հայերով: XX դ–ի կեսերից Մերձ. Արևելքում տիրող քաղ. իրավիճակի պատճառով եղել է հայերի որոշակի արտահոսք դեպի եվրոպ. երկրներ, այնուամենայնիվ, Ս–ում դեռ բնակվում էր մոտ 65–70 հզ. հայ՝ հիմնականում Հալեպում, նաև Դամասկոսում, Հոմսում, Լաթաքիայում, Քեսաբում, Կամիշլիում, Թարթուսում, Դեյր էզ–Զորում, Ռաս ուլ Այնում և այլուր: Հայերն ունեին իրենց եկեղեցիները, ազգ. վարժարանները, թերթերն ու ամսագրերը, տպարանները, երիտասարդ., մշակութ., բարեգործ., մարզ. ընկ–ները, գործում են Սբ Գրիգոր Լուսավորիչ, Սբ Վարդան, Սբ Գևորգ, Սբ Հակոբ, Սբ Աստվածածին (Հալեպ), Սբ Սարգիս (Դամասկոս) եկեղեցիները: Կային նաև կաթողիկե (հայ կաթոլիկ պատրիարք. աթոռը Բեյրութում է) և ավետարան. եկեղեցիներ: 1943–ից Ջեզիրեում գործում է հայոց առաջնորդ. փոխանորդությունը: 2011–ին սկսված ներքաղ. ճգնաժամի և հաջորդած քաղաքաց. պատերազմի, այսպես կոչված, «Իսլամական պետություն» և այլ ահաբեկչ. խմբավորումների՝ երկրի տարածքի զգալի մասի գրավման հետևանքով հայկ. համայնքի զգալի մասը լքել է Ս.՝ ապաստանելով ՀՀ–ում, Արցախում և Մերձ. Արևելքի ու Եվրոպայի որոշ երկրներում:

ՍԻՐԻԱԿԱՆ ԱՆԱՊԱՏ, անապատ Սիրիայում, Իրաքում, Հորդանանում և Սաուդյան Արաբիայում: Տարածքը՝ մոտ 1 մլն *կմ*^{2}: Ռելիեֆը հարթ մակերևույթով սարավանդ է, որն աստիճանաբար իջնում է (800–500 *մ*) դեպի հս–արլ. և ավարտվում Եփրատ գետի հովտով: Բուսականությունն աղքատ է: Կա քոչվոր. անասնապահություն:

ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, հայ. 1–ին տպագիր հրտ–յունը «Ճռաթ» («Եփրատ», Հալեպ, 1868–77) եռօրյա թերթն է, որը օսմ–ի, արաբ–ի, արաբատառ թուրք–ի հետ ունեցել է նաև հայատառ թուրք. բաժին: Հալեպում գործել են շուրջ 3 տասնյակ հայկ. տպարաններ՝ «Հայ Ձայն», «Մեսրոպ», «Սուրիական մամուլ», «Մարանաթա», «Արաքս», «Արաբա», «Մնի», «Տեր–Սահակյան», «Ոդթոս», «Պոզոքլյան», «Տիգրիս», «Ճիզմեճյան», «Եփրատ», «Սևան», «Նայիրի», «Արևելք», «Ոսկետառ», «Շիրազ», «Արփի», «Մասիս», «Հրապո», «Գարուն», «Կիլիկիա» ևն: Հալեպում հայ. գրքեր տպագրվել են նաև արաբ. «Մարոնիթ», «Էլ–Սաաէֆ», «Ահրամ», «Ֆեճըր», «Ֆրնուն», «Շեվեկ», «Էլ–Շարըք», «Վազըթ», «Հուրիէ», «Սաատ» և այլ տպարաններում: Դամասկոսում գործել է «Եվրիքյան», Ալեքսանդրետում (այժմ՝ Թուրքիայում)՝ «Ալեքսանդրետ» հայկ. տպարանները:

Սիրիայում 1918–ից ցայսօր տպագրվել են շուրջ 150 անուն հայ. պարբ–ներ, մեծ մասը՝ Հալեպում: 2012–ից երկրում սկիզբ առած քաղաքաց. պատերազմի պատճառով հայկ. համայնքի ազգ., մշակութ. կյանքը խիստ տուժել է: Ներկայում լույս են տեսնում Հայ կաթողիկե առաջնորդարանի «Պարբերաթերթ» (1960–ից) կրոն., ազգ., գեղ., Բերիո թեմի ազգ. առաջնորդարանի *«Գանձասար»* (1978–ից) պաշտոնաթերթերը, Քարեն Եփփե ազգ. ճեմարանի «Ծիլեր» (1961–64, 1972–ից) պարբերաթերթը, մասամբ իր գործունեությունն է շարունակում «Արևելք» հրտչ–յունը:

ՍԻՐԻԱՑԻՆԵՐ, սիրիացի արաբներ, Սիրիայի հիմն. բնակչությունը (18,5 մլն, 2010): Լեզուն՝ արաբ.: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են, կան նաև շիաներ, քրիստոնյաներ, ալավիներ, որոշ մասը պահպանել է տոհմացեղ. կառուցվածքը:

ՍԻՐԻՆԳՈՄԻԵԼԻԱ, (< հուն. syrinx – խողովակիկ, փողակ և myelos – ողնուղեղ), մարդու նյարդ. համակարգի քրոնիկ. առաջընթաց հիվանդություն. պայմանավորված է ողնուղեղի բնածին խանգարումներով, ողնուղեղում և երկարավուն ուղեղում գլիայի խոռոչների առաջացմամբ և տարաճումներով: Բնորոշվում է ցավային և ջերմաստիճան. զգացողության նվազումով, կիսալուծանքներով, սնուցող. խանգարումներով:

ՍԻՐԻՈՒՍ (α Մեծ Շան), **Շնաստղ**, 1,5 *ա.մ.* աստղ, երկնակամարի ամենապայծառ աստղը: Կրկնակի աստղ է, նրա Սիրիուս β բաղադրիչը առաջին հայտնաբերված սպիտակ թզուկն է:

ՍԻՐԿԻՆ Յակով Կիվովիչ (1894–1974), ռուս. ֆիզքիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1964): Աշխ–ները վերաբերում են քվանտ. քիմիայի, մոլ–ների կառույցի և ռեակցիոնակության փորձառ. հետազոտություններին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943):

ՍԻՐՎԱՐԴ (Գրիգորյան) Եղիա (1890–1985), հրապարակագիր, մշակույթի գործիչ, խմբ.: 1935–40–ին՝ *«Հնչակ»* ամսաթերթի խմբ.: Կազմել և հրատարակել է «Հնչակեան տարեգրքի» Ա և Բ հատորները (1931–32), «1903–1953. Յիսնամեակ «Երիտասարդ Հայաստանի»» (1953) հատորը: Հեղինակ է «Ուխտաւորի մը նամակները» (1934), «Խորհրդաւոր յեղափոխականը» (1953), «Մեծն Սիւրատ» (1955), «Արամ Ազըզպաշեան» (1957) գրքերի:

ՍԻՐՏ, մարդու և կենդանիների արյունատար համակարգի կենտր. օրգանը, որն արյունը մղում է զարկերակ. համակարգ և ապահովում նրա հետադարձը երակներով: Որոշ սողունների (կոկորդիլոսներ), թռչունների, կաթնասունների և մարդու Ս. սնամեջ մկան. օրգան է՝ բաժանված 4 խցիկների՝ աջ և ձախ նախասրտերի, աջ և ձախ փորոքների: Մարդու Ս. պարփակված է սրտապարկի (պերիկարդ) մեջ և տեղակայված է կրծքի խոռոչի միջնորմում: Հասուն մարդկանց Ս–ի երկ. 12–15 *սմ* է, լայնական կտրվածքը՝ 8–11 *սմ*, կնոջ սրտի զանգվածը (առանց խորշերի արյան) միջինը 240 *գ* է, տղամարդունը՝ մոտ 330 *գ*: Հասուն մարդու Ս. (բնականոն պայմաններում) կծկվում է 1 *ր*–ում 55–80 անգամ՝ մղելով 4,5–5 *լ* արյուն, 1 կծկման ժամանակ՝ 60–75 *մլ* արյուն: Ս–ի գործունեությունն իրականացվում է նախասրտերի և փորոքների փոփոխակի (փոխառփոխ) կծկումներով (*սիստոլա*) և թուլացումներով (*դիաստոլա*): Ս–ի աշխ–ը կարգավորվում է նյարդահումորալ մեխանիզմներով, սակայն սրտամկանն ունակ է կծկվելու նաև առանց նյարդ. համակարգի ազդեցության:

ՍԻՐՏԱԹՆՔԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, արյան շրջանառության ֆունկցիաների ու շնչառության խանգարումները սրտի արատների և այլ հիվանդությունների ժամանակ: Բնորոշվում է թոքերում արյան երկարատև կանգով:

ՍԻՐՑՈՎ Սերգեյ Իվանովիչ (1893–1937), խորհրդ. կուս. և պետ. գործիչ: 1913–ից՝ բոլշևիկ: 1920–21–ին՝ Օդեսայի նահանգկոմի, 1926–29–ին՝ Սիբիրի երկրկոմի քարտուղար: 1929–30–ին՝ ՌԽՖՍՀ կենտգործկոմի նախագահ: 1930–ին մեղադրվել է ֆրակցիոն գործունեության մեջ: Անհիմն բռնաղատվել է, գնդակահարվել:

ՍԻՐՈՒՆԻ (Շոլոյան) Հակոբ Առաքելի (1890–1973), հայագետ, գրող, գրականագետ, հրապարակախոս, խմբ.: Կ. Պոլսում *«Նաւասարդ»* (Դանիել *Վարուժանի* հետ) տարեգրքի, 1918–19–ին՝ *«Ազատամարտ»* պարբ–ի հրտ. և խմբ.: Բուխարեստում՝ 1922–23 և 1931–ին՝ *«Նոր արշալոյս»*, 1923–26–ին՝ *«Նաւասարդ»*, 1932–44–ին՝ *«Արագ»*, 1935–38 և 1941, 1942–43–ին՝ *«Անի»* (ռում.) և այլ պարբ–ների խմբ.: Հեղինակ է «Կեանքի մրուրէն» (1907), «Բանտի յուշատետրէս» (1914–15) և այլ պատմվածքների, հուշագրությունների, «Մթնշաղ» (1908), «Գիշերէն վերջ...» (1908) և բանաստեղծությունների այլ ժող–ների, «Հայերի ժամանակագրական պատմություն (հնագույն շրջանից մինչև 859)» (ռում., 1942–43), «Թանզիմաթ եւ հայերը» (1966) պատմագիտ., «Ռուբէն Զարդարեան» (1925), «Երուանդ Օտեան» (1927), «Մկրտիչ Պեշիկթաշլեան» (1930), «Խրիմեան Հայրիկ» (1934), «Ինչպես որ էին: Դանիել Վարուժան» (ռում., 1940), «Կոմիտասին հետ» (1965–69), «Յովհաննէս Թումանեան» (1969) գրականագիտ., «Ռումինական բառեր Տրանսիլվանիայի հայերի բարբառում» (1927), «Ռումինահայ քրոնիկոն» (մաս 1–2, 1933–34), «Միխայիլ Էմինէսքու» (1939), «Նօթեր Արճէշ քաղաքէն» (1942), «Գարեգին պատրիարք Խաչատուրեան» (2003) և այլ աշխ–ների:

ՍԻՐՈՒՆՅԱՆ Ալբերտ Մկրտչի (ծ. 1948), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1992), պրոֆ. (2013): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006): Աշակել է պրոտոններով բևեռացված թիրախների (սպին) նոր մեթոդ: Մասնակցել է ժնևում կառուցվող հադրոնային արագացուցչի՝ CMS–LHC ծրագրով գիտափորձին՝ որպես համագործակցության Երևանի ֆիզիկայի ինստ–ի խմբի ղեկ.: Լոնդոնի ֆիզիկայի ինստ–ի պատվ. անդամ (2000):

ՍԻՐՈՒՆՅԱՆ Էդուարդ (1865–1937), փիլ., ՎանՄՄ վարիչ–անդամ (1906–09), տպարանապետ: Աշխ–ներում քննել է գոյաբան., իմացաբան., տրամաբ., հոգեբ., բարոյագիտ., մարդաբան. հարցեր («Միջին ընթացք իմաստասիրութեան», 1899, ևն): Փիլ–յունը համարել է մարդու ինքնաճանաչման միջոց՝ սերտորեն կապելով հոգեբ–յան հետ: Թարգմ–յուններ է արել հայ–ից ֆրանս. (Ղ. Ալիշանի «Սիսվան») և ֆրանս–ից հայ. (Լամորթի «Աստվածաբանական խնդիրներ»):

ՍԻՐՈՒՆՅԱՆ Ղուկաս Տիգրանի (1949–2017), գրող, մանկագիր: Հեղինակ է «Իրիկուն բարի, դարձիր առավոտ» (1977), «Ընծաներ» (1982), «Մայրամե» (1984), «Ծառզարդար» (1989), «Տապանի վրա» (1996), «Ականջօղեր հայրենիքիս» (2003), «Բաց արեք, ես եմ» (2016) բանաստեղծությունների, «Բաբելոն, Բաբելոն» (1999) պատմվածքների և էսսեների, «Զվարթ ճամփորդներ» (1980), «Աստղածաղիկ» (1988), «Կորած բանալու երգը» (2002) մանկ. բանաստեղծությունների, «Հեքիաթներ» (1992) մանկ. արձակի ժող–ների:

ՀՀ նախագահի (2016), ՀԳՄ Ս. Զորյանի (1988), Վ. Անանյանի անվ. (2011) մրց–ներ:

ՍԻՑԻԼԻԱ, (Sicilia), ամենամեծ կղզին Միջերկր. ծովում, Իտալիայի կազմում: Տարածքը (հարակից կղզիներով)՝ 25,7 հզ. *կմ*²: Գտնվում է Ապենինյան թ–կղզուց հվ, որից բաժանվում է Մեսինայի նեղուցով: Բարձր.՝ 3323 *մ* (Էտնա հրաբուխ): Տարածված են թփուտներ, տափաստան. բույսեր, անտառներ, ցիտրուսայիններ, ձիթենու թավուտ, խաղողի այգիներ: Խոշոր ք–ները՝ Պալերմո, Մեսինա, Կատանիա:

ՍԻՑԻԼԻԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, պետություն XII–XIII դդ–ում: Ստեղծել են նորմանները՝ Հվ. Իտալիայում և Սիցիլիայում իրենց նվաճած տարածքներում: Առաջին թագավորը Ռոջեր II–ն էր: 1268–ին՝ Կառլ I Անժույցին: Փլուզվել է 1282–ին, 1302–ից՝ Արագոնի ավատ. տիրույթ:

ՍԻՑԻԼԻԱԿԱՆ ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ, ԵՀՊ–ի ժամանակ (10.07–17.08.1943) անգլո–ամերիկ. բանակների 15–րդ խմբավորումն ափ է հանվել Սիցիլիա և գրավել կղզին, այնուհետև սկսվել է հարձակումը Հվ. Իտալիայի վրա:

ՍԻՓԱՆ, **Նեխ Մասիք**, **Ծիպան**, հանգած հրաբխ. զանգված Հայկ. բարձրավանդակում՝ Վանա լճի հս. ափին: Բարձր.՝ 4434 *մ* (Մեծ Մասիսից հետո 2–րդը Հայկ. լ–աշխարհում), կլորավուն հիմքի շրջագիծը՝ 55 *կմ*: 3800 *մ*–ից բարձր մերձգագաթ. սարավանդ է: Լանջերն անտառազուրկ են, կան բազմաթիվ աղբյուրների ելքեր: Գերակշռում է լ–տափաստան. ու լ–մարգագետն. լանդշաֆտը, գազաթին ալպ. մարգագետիններ են: Կատար. մասը մշտապես ծածկված է ձյունով, կան փոքր ֆիրն. սառցադաշտեր:

«ՍԻՓԱՆ», Հայ ավետարան. քոլեջի պատկերազարդ տարեգիրք (1925–ից, Բեյրութ, մինչև 1964–ը՝ պարբերաթերթ): Խմբ–ներ՝ Արտաշես Տեր–Խաչատուրյան, Երվանդ Քասունի, Կարո Պետրոսյան, Բաբկեն Զանոյան, Զավեն Մսրլյան (1965–ից):

ՍԻՔՀԵՐ, 1. *սիքհիզմի* հետևորդները: Երկարատև պայքար են մղել Մեծ Մողոլների դեմ և ստեղծել իրենց պետությունը (1765–1849) Փենջաբում, որտեղ էլ ապրում է ժամանակակից Ս–ի հիմն. մասը: 2. Փենջաբցիներից առանձնացած ժողղ: Ընդհ. թիվը՝ շուրջ 20 մլն (2010): Լեզուն՝ փենջաբերեն: Հավատացյալները սիքհեր են:

ՍԻՔՀԻԶՄ, աղանդ հինդուիզմում (XVI–XVII դդ.), որը վերածվել է ինքնուրույն կրոնի, լայնորեն տարածվել է գլխավորապես Փենջաբում: Ս–ի հիմքում միաստվածությունն է, կռապաշտության, ճգնավորության, կաստաների մերժումը, ինչպես նաև Աստծու առջև *սիքհերի* հավասարության և այլադավանների հետ սրբազան պատերազմի քարոզը:

ՍԻՔՍՏԻՆՅԱՆ ԿԱՊԵԼԼԱ (Cappella Sistina), Հռոմում, նախկինում՝ տուն–եկեղեցի Վատիկանում (1473–81, ճարտ.՝ Զ. դե Դոլչի), Վերածննդի շրջանի նշանավոր հուշարձան, այժմ՝ թանգարան: Զարդարված է որմնանկարներով (1481–83, Ս. Բոտտիչելլի, Պինտուրիքյո և ուր.), կամարները՝ կամարամահիկներով և կաղապարահանումներով, խորանի պատը՝ «Ահեղ դատաստան» որմնանկարով (Միքելանջելո, 1536–41): Համաշխ. մշակութ. արժեքների ցանկում է:

ՍԻՖ (անգլ.՝ cif, < cost – գին, insurance – ապահովագրություն, freight – նավավարձ բառերի սկզբնատառերից), միջազգ. առևտր. եզրույթ, առուծախի պայմանագրի տեսակ՝ կապված ծով. ուղիով ապրանքների մատակարարման հետ. ապրանքի գինը ներառում է դրա արժեքը, ապահովագրության և առաքման նվինգստ–ից մինչև նշանակման նվինգստ փոխադրման ծախսերը:

ՍԻՖԻԼԻՍ (իտալացի բժիշկ Զ. *Ֆրակաստորոյի* «Syphilis sive de morbo Gallica» – «Սիֆիլիս կամ Ֆրանսիական հիվանդություն» պոեմի անվանումից), **լյուես**, սեռ. ճանապարհով փոխանցվող քրոնիկ. վարակիչ հիվանդություն: Հնարավոր է կենցաղ. (ընդհ. ամանեղենի միջոցով ևն) և ներարգանդ. (բնածին Ս.) վարակումը: Հարուցիչը դժգույն սպիրոխետն է (տրեպոնեմ): Գաղտնի շրջանը միջինը՝ 32 օր: Առանձնացնում են առաջնային Ս. (տրեպոնեմների թափանցման հատվածում էրոզիայի կամ խոցերի (կարծր շանկր), ավշագեղձերի բորբոքման (սիֆիլիս. բուբոն) ի հայտ գալը), 2–րդային Ս. (մաշկի և լորձաթաղանթների վրա ցաների առաջացումը, դրական շճաբան. ռեակցիաները (Վասերմանի և ուր.)), 3–րդային Ս. (գումմաներ, ներքին օրգանների, նյարդ. համակարգի ախտահարումներ ևն): Ժամանակին բուժումը առողջացման երաշխիք է:

ՍԻՖՈՆԱՅԻՆ ՋՐԻՄՈՒՌՆԵՐ (Siphonophyceae, Bryopsidophyceae), կանաչ ջրիմուռների դաս: Թալոմը խոշոր է, ոչ բջջ.: Հայտնի է մոտ 300 տեսակ (30 ցեղ)՝ հիմնականում տաք ջրերում: Որոշ տեսակներ ուտելի են:

ՍԻՖՈՆՈՖՈՐՆԵՐ (Siphonophorae, Siphonophora), հիդրոհիդների դասի ծով. աղեխորշավորներ (կնիդարիաներ): Գաղութ. ազատ լողացող կենդանիներ են: Չափերը՝ 1 *սմ*–3 *մ*, որոշ տեսակներ ունեն մինչև 10 *մ* երկ–յան թելեր (օղապարանիկներ), որոնք ծառայում են որսը բռնելուն: Հայտնի է մոտ 170 տեսակ՝ հիմնականում արևադարձ. ծովերում:

ՍԼԱԲՆԵՎԻՉ Իգոր Միխայլովիչ (1921–2007), կինոօպերատոր: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1974): Ֆիլմերից են՝ «Քո շեմին» (1963), «Ազատագրում» (1970–72), «Ազատության զինվորները» (1977), «Մոսկվան արցունքներին չի հավատում» (1980), «Մահվան հրեշտակները» (1993) ևն: «Պատերազմական ժամանակի օրենքներով» (1983), «Երրորդ սերունդ» (1985) ֆիլմերի ռեժ–ն է: Լենինյան (1972), ԽՍՀՄ Պետ. (1981) մրց–ներ:

ՍԼԱԼՈՄ (նորվեգ.՝ slalom – վայրէջքահետք), 1. **լեռնադահուկային Ս.**, դահուկ. վայրէջք բարձունքից՝ դրոշներով սահմանանշված անցումներով (դարպասներով), վայրէջքուղու երկ.՝ 500–700 *մ* և 2000 *մ* (հսկա Ս.): 2. **Թիավարական Ս.**, բայդարկաներով և կանոներով վայրէջք՝ բնական կամ արհեստ. արգելքներով արագահոս գետերով կամ ջրանցքներով: 3. **Զրային դահուկներով** Ս., հատուկ պատրաստված ջր. մրցուղով հատատուն արագությամբ և որոշակի երկ–յան քարշակման ճոպանով մաններում ջր. դահուկներով:

ՍԼԱՅՖԵՐ (Slipher) Վեստո Մելվին (1875–1969), ամերիկացի աստղագետ: Առաջինն է չափել գալակտիկաների և գնդաձև աստղակույտերի ճառագայթ. արագությունը (1912), գալակտիկաների սպեկտրներում հայտնաբերել կարմիր շեղում (1912–14):

ՍԼԱՇՉՈՎ, Սլաշչով–Կրիմսկի) Յակով Ալեքսանդրովիչ (1885/86–1929), ռուս ռազմ. գործիչ: Քաղաքաց. պատերազմում (1917–22) Հվ. Ռուսաստանի ԶՈՒ–ի, այնուհետև՝ գեն. Պ. Ն. *Վրանգելի* Ռուս. բանակի կորպուսի հրամ., գեն–լեյտ. (1920): Սպանվել է:

ՍԼԱՎՅԱՆՍԿ, ք. Ուկրաինայում: Բն.՝ 120 հզ. (2010): Երկթղ. հանգույց է: Կա կերակրի աղի արդյունահանում: Հիմնադրվել է 1676–ին: Ցեխաբուժ. առողջարան է:

ՍԼԱՎՆՈՎ, Անդրեյ Ալեքսեևիչ (ծ. 1939), ռուս. ֆիզիկոս–տեսաբան: ՌԳԱ ակադ. (2000): Աշխ–ները վերաբերում են դաշտի քվանտ. տեսությանը: Չափաբերված դաշտերի տեսության ստեղծողներից է, զարգացրել է չափաբերումաինվարիանտ. տեսության վերանորմավորման ընթացակարգ: ՌԴ Պետ. մրց. (1995):

ՍԼԱՎՈՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, սլավոն. ժողղների պատմությունը, լեզուները, գրկ–ը, բանահյուսությունը, նյութ. և հոգևոր մշակույթն ուսումնասիրող գիտ–յունների ընդհ. անվանումը:

ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, հնդեվրոպ. լեզվաընտանիքի ճյուղ: Ժամանակակից Ս. լ. բաժանվում են 3 խմբի՝ արլ. (ռուս., ուկր., բելառուս.), արմ. (լեհ., չեխ., սլովակ. ևն), հվ. (բուլղ., մակեդոն., սերբ., սլովեն. ևն): Անհետացող Ս. լ–ից է պոլաբերենը:

ՍԼԱՎՈՆԱ–ՀՈՒՆՆԱ–ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ, 1–ին բարձրագույն հանրակրթ. ուս. հաստատությունը Մոսկվայում: Հիմնադրվել է 1687–ին: Սկզբում՝ Հելենահուն., 1701–ից՝ Սլավոնա–լատ. ակադ., 1775–ից՝ Ս– հ–լ. ա., 1814–ից՝ Մոսկվայի հոգևոր ակադ.: Գործել է Սբ Երրորդություն–Սերգիևյան մայրավանքում: 1919–ին փակվել է: 1946–ին ակադ–ի հիմքի վրա ստեղծվել է *Մոսկվայի հոգևոր ակադեմիան*:

ՍԼԱՎՈՆՆԵՐ, լեզվ. ազգակցությամբ և ծագման ընդհանրությամբ միավորված ժողղ–ների խումբ Եվրոպայում՝ արլ. (ռուսներ, ուկրաինացիներ, բելառուսներ), արմ. (լեհեր, չեխեր, սլովակներ, լյուժիկներ), հվ. (բուլղարներ, սերբեր, խորվաթներ, սլովեններ, մակեդոնացիներ, բոսնիացիներ, չեռնոգորցիներ): Ս. խոսել են սլավոն. լեզուներով: Մինչև սլավոն. ժողղ–ների ձևավորումը կապված են եղել հիմնականում տարբեր պետությունների պատմության հետ: Ս. բաժանվել են մի շարք ցեղերի և ցեղ. միավորումների. օր.՝ վաղ միջնադարում Արլ. Եվրոպայում հայտնի էին իլմենները, կրիվիչները, վյատիչները, ռադիմիչները, բուժանները ևն, ավելի բարդ կազմ կար Կենտր. Եվրոպայում և Բալկաններում:

ՍԼԱՎՍԿԻ Եֆիմ Պավլովիչ (1898–1991), խորհրդ. պետ. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1949, 1954, 1962): 1957–63 և 1965–86–ին՝

ԽՍՀՄ մեքենաշինության նախարար: ԽՍՀՄ Պետ. (1949, 1951, 1983), Լենինյան (1980) մրց-ներ:

ՍԼԱՎՈՒՏԻՉ, ք. Ուկրաինայում՝ Դնեպրի ձախ ափին: Կառուցվել է 1986–88-ին՝ Չեռնոբիլ ԱԷԿ-ի վթարից տուժած աշխատակիցների և նրանց ընտանիքների համար, որոնք տեղափոխվել են Պրիպյատ ք-ից:

ՍԼԵՅՏՈՆ (Slayton) Դոնալդ Քենթ (1924–1993), ամերիկացի աստղագնաց: ՌՕՈՒ պաշտոնաթող մայոր: Թռիչք է կատարել «Սոյուզ-Ապոլոն» տիեզ. համակարգով: Թռիչքի ընդհ. տևողությունը՝ 217 *ժ* 8 *ր*:

ՍԼԵՊՅԱՆ Էրիկ Իոսիֆի (ծ. 1931), կենսաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1981), պրոֆ. (1983): Էկոլոգ. ախտաբանության գիտ. դպրոցի հիմնադիր: Աշխ-ները վերաբերում են տիեզ. մարդաբան. էկոլոգիային, վնասատուների և հիվանդությունների հանդեպ բույսերի իմունիտետին, բուսահիգիենայի հիմնախնդիրներին և քաղաք. բնական միջավայրի պահպանությանը:

ՌԲՆԳԱ ակադ. (2008):

ՍԼԵՏԵՐ, **Սլեյտեր** (Slater), Ջոն Քլարկ (1900–1976), ամերիկացի ֆիզիկոս-տեսաբան: Աշխ-ները վերաբերում են ատոմների, մոլ-ների, պինդ մարմնի տեսության մեջ քվանտ. մեխանիկայի կիրառմանը: Առաջարկել է բյուրեղների բևեռ. մոդել (1930), ֆեռոմագնետիզմի, բազմաէլեկտրոն. համակարգերի տեսություններ: Ներմուծել է սպինային ալիքները (ֆ. *Բլոխից* անկախ): Զարգացրել է քվանտ. քիմիայի արժեք. կապերի տեսությունը:

ՍԼԻՆԿՈ Միխայիլ Գավրիլովիչ (1914–2008), ռուս. ֆիզքիմիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1991, ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ՝ 1966–ից): Աշխ-ները վերաբերում են կատալիտիկ. շարժընթացների կինետիկային, քիմ. շարժընթացների և ռեակտորների մաթ. մոդելավորմանը:

Լենինյան (1960), ԽՍՀՄ (1946), Ուկր. ԽՍՀ (1973) Պետ. մրց-ներ:

ՍԼԻՉԵՆԿՈ Նիկոլայ Ալեքսեևիչ (ծ. 1934), ռուս. երգիչ, դերասան, ռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1981): 1951-ից՝ Մոսկվայի «Ռոմեն» գնչուական թատրոնի (1972-ից՝ գլխ. ռեժ.) դերասան: Բեմադրել է Մ. Վ. Շտոկի «Գրուշենկա» (ըստ Ն. Ս. Լեսկովի, 1973, նաև խաղացել երիտասարդ գնչուի, իշխանի, Գոլովանի դերերը), Լ. Ն. Տոլստոյի «Կենդանի դիակ» (1984, ֆ. Պրոտասովի դերակատարը) և այլ պիեսներ: Երգացանկում՝ գնչուական երգեր, ինագույն ռոմանսներ ևն: ԽՍՀՄ Պետ. (1987), ՌԴ Կառ-յան (2013) մրց-ներ:

ՍԼԻՎԵՆ, ք. Բուլղարիայում՝ Ստարայա Պլանինա լ-ան ստորոտին: Բն.՝ 102 հզ. (2010): Երկրի տեքստիլ արդ-յան հին կենտրոններից է (1830-ական թթ-ից): Մոտակայքում կա ցեխաբուժ. առողջարան:

ՍԼԿՈՒՆԻՆԵՐ, **Սլկունիք, Սղկունիք,** նախարար. տոհմ Հին Հայաստանում: ***Մովսես Խորենացու*** հավաստմամբ՝ տոհմի հիմնադիրն ու անվանադիրը Սլաք նահապետն էր: Ս-ի տոհմ. կալվածքը Տուրուբերան նահանգ-ի Տարոն գավ-ն էր: Ըստ ***Գահնամակի***՝ Ս. զբաղեցրել են 29-րդ «բարձր», իսկ ըստ ***Ջորանամակի***՝ Հայոց բանակին տրամադրել են 300 ձիավոր: IV դ-ի սկզբին Ս-ի նահապետ Սղուկն ապստամբել է Հայոց արքա Տրդատ Գ Մեծի դեմ: Արքայի հրամանով Սամիկոնյանները պարտության են մատնել և կոտորել Ս-ին: Այդ ծառայության դիմաց Ս-ի տիրույթները շնորհվել են Մամիկոնյաններին: Ս-ի շառավիղներից IV դ-ում հիշատակվում է Գինդ եպս-ը, V դ-ում՝ Այրուկ իշխանը, որը 451-ին կռվել է Վարդանանց կողմում:

ՍԼՅՈՒՄԱՐԵՆԿՈ Զախար Կարպովիչ (1907–1987), խորհրդ. ռազմ. գործիչ: ԽՄ հերոս (1944, 1945): Տանկ. զորքերի գեն-լեյտ. (1963): ՀՄՊ-ի ժամանակ՝ տանկ. գնդի, բրիգադի հրամ.:

ՍԼՈՆԻՄՍԿԻ Սերգեյ Միխայլովիչ (ծ. 1932), ռուս. կոմպոզիտոր, երաժշտագետ, դաշնակահար: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1987): Հեղինակ է «Վարպետն ու Մարգարիտան» (1972), «Մարի Ստյուարտ» (1980) և այլ օպերաների, նաև բալետի, սիմֆոնիաների, գործիք. կոնցերտների, թատրոնի և կինոյի երաժշտության ևն:

Մ. Գլինկայի անվ. ՌԽՖՍՀ (1983), ՌԴ (2001) Պետ. մրց-ներ:

ՍԼՈՎԱԿԵՐԵՆ, ***սլովակների*** լեզուն: ***Սլովակիայի*** պետ. լեզուն: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի սլավոն. ճյուղին: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՍԼՈՎԱԿԻԱ, պետություն Արլ. Եվրոպայում: Սահմանակից է Լեհաստանին, Ուկրաինային, Հունգարիային և Չեխիային: Տարածքը՝ 49 հզ. *կմ*², բն.՝ 5,4 մլն (2015): Մայրաքաղաքը՝ ***Բրատիսլավա***: Պետ. լեզուն՝ սլովակ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Բաժանված է 8 վարչ. երկրամասերի: Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է: Անդամակցում է ՄԱԿ-ին, ԱՀԿ-ին, ԵՄ-ին, ԵԱՀԿ-ին: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 23 հզ. ԱՄՆ դոլար է (2015): Արտահանում է մեքենաներ և սարքավորումներ, մետաղներ, քիմիկատներ, պլաստմասսաներ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթ ու նավթամթերք, փայտանյութ, կիսապատրաստվածքներ ևն: Դրամ. միավորը՝ եվրո:

Մ. թ. V դ–ից Ս-ի տարածքում տիրապետող էթնիկ տարրը սլավոններն էին: XI դ-ում ներառվել է Հունգ. թագավորության մեջ: XVI դ-ի կեսերին Հվ. Ս. նվաճել է Օսմ. կայսրությունը, մնացած մասը եղել է Հաբսբուրգների կայսրության կազմում (ամբողջ Ս-ի միացումն ավարտվել է XVII դ-ի վերջին): XVIII–XIX դդ-ում առաջացել է ազգ. շարժումը: 1848–49-ի հեղ-յան շրջանում Ս-ի ազգ. շարժման ներկայացուցիչները հանդես են եկել ժողովրդավար. վերափոխումների, սլովակների ազգ. իրավահավասարության պահանջներով: 1867-ին ներառվել է Ավստրո-Հունգարիայի հունգ. մասի մեջ: Ավստրո-Հունգարիայի փլուզումից (1918) հետո եղել է Չեխոսլովակիան Հանրապետության կազմում: 1938-ի աշնանը հվ. շրջանները միացվել են Հունգարիային, 1939-ի մարտին հռչակվել է անկախ պետություն՝ Գերմանիայի «պահպանության» ներքո: 1945-ին ազատագրել է Կարմիր բանակը: Սլովակ. և չեխ. հողերը վերամիավորվել են Չեխոսլովակյան Հանրապետության շրջանակներում (1960-ից՝ Չեխոսլովակիայի Սոց. Հանրապետություն, ՉՍՍՀ): 1969-ից՝ Սլովակյան Սոց. Հանրապետություն ՉՍՍՀ-ի կազմում, 1989-ից՝ Սլովակյան Հանրապետություն Չեխոսլովակյան Դաշն. Հանրապետության կազմում: 1993-ի հունվ. 1-ից անկախ պետություն է: 2004-ին անդամակցել է ԵՄ-ին: 2009-ին մտել է եվրոյի գոտի:

Ս-ում 1-ին հայ ընտանիքները հաստատվել են XVII դ-ի կեսին, սակայն հայ համայնքը կազմավորվել է վերջին շրջանում, պաշտոնապես գրանցվել է 2002-ին: Ներկայում Ս-ում բնակվում է ավելի քան 500 հայ, հիմնականում՝ Բրատիսլավայում:

Ս-ի խորհրդարանը 2004-ին ճանաչել է Հայոց ցեղասպանությունն Օսմ. Թուրքիայում:

ՍԼՈՎԱԿՆԵՐ (ինքնանվանումը՝ սլովացի), ժողդ, Սլովակիայի հիմն. բնակչությունը (4,6 մլն, 2001): Լեզուն՝ սլովակ.: Հավատացյալները հիմնականում կաթոլիկ են, կան նաև բողոքականներ:

ՍԼՈՎԱՑԿԻ (Slowacki) Յուլիուշ (1809–1849), լեհ բանաստեղծ, թատերագիր: 1831-ից՝ վտարանդի: Հեղինակ է «Յան Բելեցկի» (1830), «Հրեշտակներ» (1838), «Ծվեյցարիայում» (1839), «Ճանապարհորդություն Նեապոլից Սուրբ երկիր» (1840) հոգեբ., «Բենյովսկի» (1840–41, անավարտ) պոեմների, «Պոեզիա» (1832–33) ժող-ի, «Կորդիան» (1834), «Բալլադինա» (1834, հրտ.՝ 1939), «Լիլիա Վենցա» (1840), «Քայոնձ Մարեկ» (1843), «Սոլոմեի արծաթե երազը» (1844) և այլ դրամաների: Ս-ու պատմափիլ. հայացքների հանրագումարը «Արքա Ոգին» (1847, անավարտ) էպոպեան է: 1837-ին, Բեյրութ մեկնելու ճանապարհին, մոտ մեկ ամիս եղել է Անթիլիասում, որտեղ գրել է «Անհելին» (1838) այլաբան. պոեմը: Կարծիք կա, որ բանաստեղծի նախնիները հայկ. ծագում ունեն:

ՍԼՈՎԵՆԱՑԻՆԵՐ (ինքնանվանումը՝ սլովենացի), ժողդ, Սլովենիայի հիմն. բնակչությունը (1,6 մլն, 2002): Լեզուն՝ սլովեն.: Հավատացյալները հիմնականում կաթոլիկ են, կան նաև բողոքականներ և ուղղափառներ:

ՍԼՈՎԵՆԵՐԵՆ, ***սլովենների*** լեզուն, ***Սլովենիայի*** պետ. լեզուն (սերբա-խորվաթ-ի և մակեդոն-ի հետ): Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի սլավոն. ճյուղին: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՍԼՈՎԵՆԻԱ, պետություն Հվ. Եվրոպայում: Սահմանակից է Ավստրիային, Հունգարիային, Սերբիային և Իտալիային: Տարածքը՝ 20,2 հզ. *կմ*², բն.՝ 2 մլն (2015): Մայրաքաղաքը՝ ***Լյուբլյանա***: Պետ. լեզուն՝ սլովեն.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը: Բաժանված է 12 վիճակագր. շրջանների: Անդամակցում է ՄԱԿ-ին, ԱՀԿ-ին, ԵՄ-ին, ԵԱՀԿ-ին: Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 32 հզ. ԱՄՆ դոլար է (2015): Արտահանում է մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, դեղամիջոցներ, սննդամթերք ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթ ու նավթամթերք, արդ. տարբեր ապրանքներ, սննդամթերք: Դրամ. միավորը՝ եվրո:

Ս-ի տարածքը սլավոններով բնակեցվել է VII դ–ից: 623–658-ին եղել է Սամո պետության մասը, ապա մտել է Կարանտանիայի կազմի մեջ: XI–XIII դդ-ում առաջացել են մի շարք իշխանություններ, որոնք մտել են Հռոմ. սրբազան կայսրության մեջ, XVI դ-ից՝ Ավստրիայի տիրապետության տակ: XIX դ-ում առաջացել է ազգ. շարժումը: 1918-ից Ս-ի մեծ մասը մտել է Սերբերի, խորվաթների և

սլովենների թագավորության (1929–ից՝ Հարավսլավիա) մեջ, որոշ մասեր մնացել են Իտալիայի և Ավստրիայի կազմերում: ԵՀՊ-ի տարիներին Հարավսլավիան գրավել են Գերմանիան և դաշնակիցները, 1945-ին ազատագրել է Հարավսլավիայի ժողովրդաազատագր. բանակը: Իտալիայի հետ խաղաղության պայմանագրով (1947) Ս-ին են վերադարձվել 1918-ից Իտալիայի կազմում եղած և հիմնականում սլովեններով բնակեցված տարածքի մեծ մասը: 1945–91-ին եղել է Հարավսլավիայի Ֆեդերատիվ Սոց. Հանրապետության կազմում: 1991-ից անկախ պետություն է: 2004-ից անդամակցել է ԵՄ-ին: 2007-ին մտել է եվրոյի գոտի:

ՍԼՈՎԵՆՆԵՐ, իլմենյան (նովգորոդյան), արլ. սլավոն. ցեղերի միություն VI–X դդ-ում: Բնակվել են Իլմեն լճի ափերին, Վոլխով, Լովատ, Սնտա գետերի ավազաններում և Սոլոգա գետի վերին հոսանքի շրջանում: IX դ–ի 1-ին կեսին ստեղծել են (չուդերի, կրիվիչների մի մասի և այլոց հետ) վաղպետ. կազմավորում: Մտել են հինռուս. ժողդ-ի կազմի մեջ:

ՍԼՈՒՇԿԵՎԻՉ (Stuszkiewicz) Էուգենիուշ (1901–1981), լեհ լեզվաբան, հնդկագետ, հայագետ: Հեղինակ է «Պետությունը և հասարակությունը Հին Հնդկաստանում» (1949), «Բուդդան և նրա ուսմունքը» (1965), «Թուրքերեն փոխառյալ բառեր հայերենում», «Հայկական առածներ», «XVII դարի հայկական երեք փաստաթուղթ», «Լվովի հայոց համայնքի ավագների երդումը ըստ Սիգիզմունդ Ա-ի 1519-ին հաստատած հին հայկական իրավական օրենսգրքի» աշխ-ների, նաև Լեհաստանի հայկ. գաղթավայրերի պատմության, Մեսրոպ Մաշտոցի, Մովսես Խորենացու, Ներսես Շնորհալու, Սայաթ–Նովայի, Խ. Աբովյանի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի և ուր. մասին հանրագիտ. հոդվածների: Կազմել է Լեհաստանի հայկ. ձեռագրերի ցուցակը (1958):

ՍԼՈՒՅԿԻՍ (Sluckis) Միկոլաս (1928–2013), լիտվացի գրող: Լիտվ. ԽՍՀ ժող. գրող (1984): Հեղինակ է «Երկինք տանող սանդուղքը» (1963, հայ.՝ 1974), «Ադամախնձոր» (1966), «Ծարավ» (1968), «Օրվա վերջում» (1981), «Ուղևորություն դեպի լեռները և հակառակը» (1981), «Աշխարհի տոհմածառը» (1985) վեպերի, նաև պատմվածքների, վիպակների և այլ գործերի:

ՍԽԱԼԱՆՔ, x – a-ի տարբերությունը, որտեղ a-ն տրված թիվն է, որը դիտվում է որպես մի մեծության մոտավոր արժեք, որի իսկական արժեքը x-ն է, x – a-ի մեծությունը կոչվում է նաև բացարձակ, իսկ (x–a)/a-ն՝ հարաբեր. Ս.:

ՍԽՈՒՏԵՆ, Սխոուտեն (Schouten), Վիլլեմ Կոռնելիս (1567/80–1625), հոլանդացի ծովագնաց: 1615–16-ին Յ. Լեմերի հետ ղեկավարել է արշավախումբ դեպի Ինդոնեզիա, հայտնագործել Հոռն հրվանդանը և մի շարք կղզիներ՝ Տումատոու, Սամոա և Բիսմարկի կղզեխմբերում:

ՍԽԻԶՄ (հուն.՝ schisma – պառակտում), հասկացություն, որը նշանակում է քրիստ. եկեղեցու պառակտում, իսկ առավել հաճախ՝ եկեղեցիների տարանջատում (ուղղափառ և կաթոլիկ):

ՍԽՈԼԱՍՏԻԿԱ, սքոլաստիկա (հուն.՝ scholastikos – դպրոցական, գիտական), 1. միջնադար. կրոնաիդեալիստ. փիլ., որին հատուկ է ենթարկվածությունն աստվածաբանությանը: ***Ունիվերսալիների*** շուրջ բանավեճերում սխոլաստիկ. ռեալիզմին հակադրել են ***նոմինալիզմը*** և ***կոնցեպտուալիզմը***: Ուշ շրջանում (XII–XIII դդ.) Ս. զարգացել է գլխավորապես համալսարաններում (Փարիզի համալսարան ևն): Պլատոնականությունն աստիճանաբար փոխարինվել է արիստոտելականությամբ (Սիգեր Բյուզանդացի, Ալբերտ Մեծ, Թովմա Աքվինացի ևն): Ս-ի դեմ հանդես են եկել Վերածննդի հումանիստները: Ս-ի վերածնունդը կապվում է հակառեֆորմացիայի հետ, հատկապես՝ Իսպանիայում (XVI–XVII դդ., Ֆ. Սուարես, Մ. Մոլինա):

Հայ փիլ-յան մեջ քննարկվել են Ս-ի ինչպես ընդհ. փիլ. խնդիրներ, այնպես էլ կրոնափիլ. որոշ հարցադրումներ: XII–XIV դդ-ում թարգմանվել են սխոլաստ հեղինակների բազմաթիվ երկեր: Ս. փխբ. իմաստով նշանակում է կյանքից կտրված:

ՍԽՏՈՐ (Allium Sativum), շուշանազգիների ընտանիքի սոխուկավոր, երկամյա կամ բազմամյա խոտաբույսերի ցեղ: Ունի 2 ենթատեսակ՝ ցողունավոր և անցողուն: Բանջարաբույս է (սոխուկը պարունակում է շաքար, C, B վիտամիններ, եթերայուղ): ՀՀ-ում մշակում են Արարատյան դաշտում և նախալեռն. գոտում:

ՍԽՏՈՐԱԳՈՐԾԵՐ (Pelobatidae), ***անպոչ երկկենցաղների*** ընտանիք: Նման են դոդոշի, որից տարբերվում են հարթ մաշկով: Երկ.՝ մինչև 10 *սմ*: Հայտնի է 50 տեսակ: ՀՀ-ում հանդիպում է սիրիական սխտորագորտը:

ՍԿԱԳԵՌԱԿ (Skagerrak), Դանիական նեղուցներից: Միացնում է Բալթիկ և Հս. ծովերը: Երկ.՝ 225 *կմ*, լայն.՝ 60–150 *կմ*, խոր.՝ մինչև 809 *մ*, նավարկուղում նվզգն խոր.՝ 53 *մ*: Ափին է Օսլոն:

ՍԿԱԴԱՐԻ ԼԻՃ, **Շկոդեր**, Չեռնոգորիայի և Ալբանիայի սահմանին: Մակերեսը՝ 356–388 *կմ*^{2} (փոփոխությունը՝ սեզոնային), խոր.՝ 44 *մ*: Ջրհոսքը՝ Ադրիատիկ ծով: Նավարկելի է: Կա ձկնորսություն:

ՍԿԱԼԻԳԵՐ (Scaliger) Ժոզեֆ Ժյուստ (1540–1609), ֆրանսիացի հումանիստ: Հ. Կ. ***Սկալիգերի*** որդին: Հուգենոտ է: Անտիկ տեքստերի մեկնաբան: Գիտ. ժամանակագրության հիմնադիրը, մշակել է թվականության (տոմարի) միասնականացման համակարգ:

ՍԿԱԼԻԳԵՐ Հուլիոս Կեսար (Ժյուլ Սեզար, 1484–1558), ֆրանսիացի բանասեր, գրաքննադատ, բանաստեղծ: Ժ. Ժ. ***Սկալիգերի*** հայրը: Հեղինակ է «Պոետիկա» (գիրք 1–7, հրտ.՝ 1561) աշխ-յան:

ՍԿԱԼՅԱՐ ԱՐՏԱԴՐՅԱԼ a և b վեկտորների, վեկտորների երկ-յունների և նրանցով կազմված φ աննկյան կոսինուսի արտադրյալին հավասար թիվ (սկալյար) է, այսինքն՝ (**a, b**) = |**a**| · |**b**| · cos φ: S ուղղագիծ հատվածի երկ-յամբ F ուժի կատարած աշխ-ը հավասար է այդ մեծությունների Ս. ա-ին (**F, S**): Սկալյար մեծություններ են երկ-յունը, մակերեսը, ժամանակը, ջերմաստիճանը ևն:

ՍԿԱԼՅԱՐԻԱՆԵՐ (Pterophyllum), ***պերկեսաձկների*** ընտանիքի ձուկ: Երկ.՝ մինչև 15 *սմ*: Սարմինն արծաթագույն է՝ սև լայն. շերտերով: Տարածված է Հվ. Ամերիկայի ջրամբարներում: Կան աքվարիում. տեսակներ (շղարշային, սև, ծխագույն և այլ Ս.):

ՍԿԱԼՖԱՐՈ (Skalfaro) Օսկար Լուիջի (1918–2012), Իտալիայի նախագահ՝ 1992–1999-ին՝ ՔԴԿ-ից: Ա. Մորոյի, Ջ. Լեոնեի, Ջ. Անդրեոտիի, Բ. Կրաքսիի կառ-յուններում՝ քանիցս նախարար:

ՍԿԱՄՈՑՅԻ (Scamozzi) Վինչենցո (1548–1616), իտալացի ճարտ., ճարտ-յան տեսաբան: Հեղինակ է Տրիսսինոյի պալատի (մոտ 1576, Վիչենցա), Նոր դատախազության շենքի (1584-ից, ավարտել է Բ. Լոնգենան, Վենետիկ), Սբ Ռուպերտի տաճարի (1614–28, Զալցբուրգ), «Համապարփակ ճարտարապետության գաղափարը» (1615) գրքի:

ՍԿԱՅՊ (անգլ.՝ skype), համակարգչ. ծրագրային ապահովում՝ համացանցում երկկողմանի կապի (ձայն., տեսակապ ևն) կազմակերպման համար: Աշակել է Skype Technologies S. A. (Լյուքսեմբուրգ) կորպորացիան 2003-ին, որի անունով էլ կոչվել է:

ՍԿԱՆԴԵՐԲԵԳ (Skanderbeg, իսկ. անունը և ազգանունը՝ Գեորգ Կաստրիոտի, մոտ 1405–1468), Ալբանիայի Ազգ. հերոս: Գլխավորելով (1443) ժող. ապստամբությունը՝ օսմ. գերիշխանությունից ազատագրել է երկրի մեծ մասը: Նախաձեռնել է Լեժայի լիգայի ստեղծումը, եղել է նրա բանակների գլխ. հրամ-ր:

ՍԿԱՆԴԻՆԱՎՅԱՆ ԹԵՐԱԿՂՋԻ, ամենամեծը Եվրոպայում: Երկ.՝ մոտ 1900 *կմ*, լայն.՝ մինչև 800 *կմ*, տարածքը՝ մոտ 800 հզ. *կմ*^{2}: Ողողվում է Բալթիկ, Հս., Նորվեգ. և Բարենցի ծովերի ջրերով: Թ–կղզու մեծ մասն զբաղեցնում են Սկանդ. լ–ները, Շվեդիան, Նորվեգիան, Ֆինլանդիայի մի մասը:

ՍԿԱՆԴԻՆԱՎՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, հնդեվրոպ. լեզվաընտանիքի գերմ. լեզվախմբի հս. ենթախումբ: Ներառում է դանիերենը, շվեդ-ը, նորվեգ-ը, իսլանդ-ը և ֆարերենը: Հնագույն գրավոր հուշարձանները VIII–XI դդ-ի ռունագիր արձանագրություններն են (տես *Ռուներ*):

ՍԿԱՆԴԻՆԱՎՅԱՆ ԼԵՌՆԵՐ, բարձրավանդակ Եվրոպայում՝ Սկանդ. թ–կղզում: Երկ.՝ 1700 *կմ*, լայն.՝ մինչև 600 *կմ*, բարձր.՝ 2469 *մ* (Գալիյոպիգեն լ.): Լ–ճայուղերը զառիվայր իջնում են դեպի Նորվեգ. ծով՝ առաջացնելով բազմաթիվ հրվանդաններ, թ–կղզիներ, խոր հովիտներ և ֆիորդներ: Ս. լ–ին բնորոշ են Սկանդ. տիպի (վահանաձև) ժամանակակից սառցադաշտերը (մոտ 3 հզ. *կմ*^{2}): Կան երկաթի, պղնձի, տիտանի և այլ օգտ. հանածոներ:

ՍԿԱՆԴԻՈՒՄ (Scandium), Sc, տարրերի պարբեր. համակարգի III խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 21, ա. զ.՝ 44,95591, հազվագյուտ մետաղ է: Կոչվել է հայտնաբերման վայրի՝ Սկանդ. թ–կղզու անունով (լատ.՝ Scandia): Սպիտակ, արծաթափայլ, դեղնավուն երանգով, փափուկ, պլաստիկ մետաղ է, խտ.՝ 3,02 *գ/սմ*^{3}, $t_{հալ.}$՝ 1541°C: Քիմիապես ակտիվ է, հատկապես՝ տաքացնելիս: Բարձր ամրությամբ և կոռոզիակայունությամբ թեթև համաձուլվածքների բաղադրիչ է, ջրածնի բարձրջերմաստիճան. պարաօրթո-կոնվերսիայի կատալիզորդ, միջուկ. տեխնիկայում՝ նեյտրոն. զտիչ:


ՍԿԱՌԼԱՏՏԻ (Scarlatti) Ալեսսանդրո (1660–1725), իտալացի կոմպոզիտոր: Նեապոլի օպեր. դպրոցի հիմնադիրը: Դ. ***Սկառլատտիի*** հայրը: Հեղինակ է սերիա-օպերաների, կանտատների և այլ գործերի:

ՍԿԱՌԼԱՏՏԻ Դոմենիկո (1685–1757), իտալացի կոմպոզիտոր, կլավեսինա-

հար: Ա. ***Սկառլատտիի*** որդին: Ստեղծել է վիրտուոզ կատարող. ոճ: Ս–ի կլավիր. սոնատներում ձևավորվել է սոնատային ***ալեգրոն***: Հեղինակ է նաև կանտատների և այլ գործերի:

ՍԿԱՌՆԵՐ (շվեդ.՝ skarn – ցեխ, թափոններ), կիսաբյուրեղ. մետասոմատ. լեռն. ապարներ, որոնք կազմված են կրամագնեզիումաերկաթախառն սիլիկատներից և ալյումասիլիկատներից: Ս–ին հաճախ հարում են հանքանյութերի (երկաթի, պղնձի, կապարի, ցինկի, վոլֆրամի, մոլիբդենի ևն) խոշոր կուտակներ, որոնք առաջացնում են սկառն. հանքավայրեր:

ՍԿԱՏՈԼ, 3–մեթիլինդոլ, անգույն, շատ տհաճ հոտով բյուրեղ. նյութ է, $t_{հալ.}$՝ 96°C: Պարունակվում է քարածխային խեժում, որոշ եթերայուղերում, առաջանում է սպիտակուց. նյութերի նեխման ժամանակ: Չափազանց նոսր լուծույթներն ունեն ծաղկի հաճելի հոտ, կիրառվում է որպես բուրավետ նյութ օծանելիքի արտադր–յան մեջ:



ՍԿԱՈՒՏՈՒԹՅՈՒՆ (անգլ.՝ scaut – հետախույզ, խուզարկու), արտադպրոց., կրթադաստիարակչ. համակարգ: Հիմնադրել է անգլիացի գնդ. Ռոբերտ Բեյդըն–Փաուելը (1857–1941) XX դ–ի սկզբին. 1907–ին ստեղծվել են տղաների (բոյսկաուտ), 1909–10–ին՝ աղջիկների (գըռլսկաուտ) առաջին կազմ–յունները: Ներկայում Համաշխ. սկաուտ. շարժումը (ՀՍՇ) միավորում է 160 երկրի կազմ–յունները՝ շուրջ 30 մլն սկաուտներով:

Հայկ. առաջին սկաուտ. խմբերն ստեղծվել են 1908–ին Հաղկաստանում, 1910–ին՝ Վանում, Կ. Պոլսում: Մեծ եղեռնից հետո՝ 1917–22–ին, Կ. Պոլսում գործել է Հայ մարմնակրթ. ընդհ. միությունը (ՀՄԸՄ): Այնուհետև շարժումը տարածվել է Սփյուռքում՝ ստանալով կուս. հովանավորություն [ՀՄԸՄ–ին՝ ՀՅԴ–ն, Հայ մարմնակրթ. միությանը (ՀՄՄ)՝ ՍԴՀԿ–ն, Հայ երիտասարդաց ընկերակցությանը (ՀԵԸ)՝ ՌՍԱԿ–ը] և մեծապես նպաստել է հայապահպանմանը և հայրենադարձությանը: Հայաստանի առաջին հանրապետության օրոք՝ 1919–ին հիմնադրվել է ՀՄԸՄ–ի սկաուտ. միությունը, որը խորհրդ. տարիներին արգելվել է: Սկաուտ. խմբեր ՀԽՍՀ–ում վերսկսել են գործել 1989–ից: 1995–ին ՀՀ–ում ՀՄԸՄ–ի կառույցը պաշտոնապես գրանցվել է որպես Հայաստանի ազգ. սկաուտ. կազմ–յուն (ՀԱՍԿ) և 1997–ից անդամակցում է ՀՍՇ–ին: Ամեն տարի ապրիլի 18–ին նշվում է Հայ սկաուտի օրը:

ՍԿԱՖԱՆԴՐ (< հուն. skaphe – նավակ և ander, սեռ. հոլ.՝ andros – մարդ), անհատ. հերմետիկ հարմարանք (կեղև, սաղավարտ, ձեռնոց, կոշիկ), որն ապահովում է մարդու կենսագործունեությունը բնականոնից տարբեր (ջրում, տիեզերքում ևն) պայմաններում:

ՍԿԵՊՏԻՑԻԶՄ (հուն.՝ skeptikos – հետազոտող), փիլ. դիրքորոշում, որն ընդգծում է գիտելիքի հարաբեր. բնույթը և մերժում ճշմարտության որևէ հավաստի չափանիշի գոյությունը: Ս–ի ծայրահեղ ձևն ***ագնոստիցիզմն*** է: Ս. հին հուն. փիլ–յան ուղղություն է, անցել է զարգացման 3 փուլ՝ վաղ Ս. (Պիռոն), Պլատոնյան ակադ–ի Ս. (Արքեսիլայոս, Կառնեադես) և ուշ Ս. (Էնեսիդեմոս, Սեքստոս Էմպիրիկոս): Նոր շրջանում (XVI–XVIII դդ.) Ս. եղել է ազատախոհության, կրոն. և փիլ. դոգմաների քննադատության հոմանիշ (Մ. Մոնտեն, Պ. Բեյլ և ուր.):

Հայ փիլ–յան մեջ Ս. քննադատել է Դավիթ Անհաղթը, վերլուծել իմացաբանության և տրամաբ–յան դեմ սկեպտիկների փաստարկները, մշակել հակափաստարկներ, որոնք դարձել են հայ փիլ. մտածողության հակասկեպտիկ. ուղղվածության հիմքերը:

ՍԿԵՎՌԱ, վանք, գիտամշակութ. կենտրոն Կիլիկ. Հայաստանում: Ունեցել է բարձր տիպի դպրոց, գրչատուն, մտնդ., կուսանոց: XII–XIII դդ–ում եղել է գրչության և մանրանկարչության կարևոր կենտրոն (տես ***Սկևռայի գրչության կենտրոն***): Ս–ում է եղել նաև ***Հեթումյանների*** տոհմ. դամբարանը:

«ՍԿԵՎՌԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆ», «Լվովի Ավետարան», «Լեմբերգի Ավետարան», 1197–ի մագաղաթե ձեռագիր մատյան (գրիչ և մանրանկարիչ՝ Գրիգոր Սկևռացի, պատվիրատու՝ Ներսես Լամբրոնացի): Նորոգումից (1592) հետո մինչև 1830–ն այն եղել է Լվովի հայ համայնքում, ապա անհետացել է: 1993–ին հայտնաբերվել է Լեհաստանի Գնիեզնո ք–ի արքեպիսկոպոսարանում, ապա ուղարկվել Գերմանիա՝ վերանորոգման: Ավետարանը պահվում է Վարշավայի ազգ. գրադարանում: 1997–ին «Ս. Ա.» ցուցադրվել է Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» թանգարանում: Պատկերազարդումն ընդգրկում է Եվսեբիոս Կեսարացու թուղթը՝ Եվսեբիոսի և Կարպիանոսի կիսանդրիների պատկերներով, 7 խորան, Ավետարաններն սկսվում են շքեղ անվանաթերթերով՝ նստած ավետարանիչների պատկերներով: 2011–ին Մոնդ–ին են նվիրել Ավետարանի ֆաքսիմիլեն:

ՍԿԵՎՌԱՅԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ, բարձր տիպի դպրոց Սկևռայի վանքում, որտեղ XII–XIII դդ–ում վերելք են ապրել գրչությունը, մանրանկարչությունը, փորագրությունը: Դպրոցի առաջին (մինչև XIII դ–ի սկիզբ) շրջանը համընկել է ***Ներսես Լամբրոնացու***, երկրորդը՝ ***Գրիգոր Սկևռացու*** գործունեության հետ: Նշանավոր գործիչներից են ***Գրիգոր Սյիճեցին, Գրիգոր Պիծակը, Սարգիս Պիծակը,*** հայտնի գրիչներ և մանրանկարիչներ ***Կոստանդինը, Արիստակեսը,*** Սիոն ծաղկողը, Սամվելը, Հովսեփը, Հուսիկը, Ներսեսը, բարունապետներ Սիմեոնը, Խաչատուրը, ***Մովսես Երզնկացին***, Ավետիսը, Ստեփանոս Իրիցու որդին և ուր.: Ընդօրինակված և մեզ հասած ձեռագրերն ու մատյանները Մոնդ–ում են:

ՍԿԵՐՑՈ (իտալ.՝ scherzo – կատակ), 1. կատակ. բնույթի վոկալ–գործիք. ստեղծագործությունների ընդհ. անվանումը XVI–XVII դդ–ում, նաև գործիք. պիես (Կ. Մոնտեվերդի և ուր.): 2. ***Սյուիտի*** մասերից է (Յ. Ս. Բախ և ուր.): 3. Սոնատային սիմֆ. ցիկլի մաս, որը XVIII դ–ի վերջին փոխարինել է ***մենուետին*** (Լ. վան Բեթհովեն, Ա. Բրուքներ, Գ. Մահլեր, Դ. Դ. Շոստակովիչ և ուր.): 4. XIX դ–ից՝ ինքնուրույն երաժշտ. երկ: Նման է ***կապրիչչոյին*** (Ֆ. Շոպենի, Ռ. Շումանի դաշնամուր. սյուիտները ևն):

ՍԿԻԱՊԱՌԵԼԼԻ (Schiaparelli) Ջովաննի Վերջինիո (1835–1910), իտալացի աստղագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1860): 1859–60–ին աշխատել է Պուլկովոյի աստղադիտարանում՝ Օ. Վ. ***Ստրուվեի*** ղեկավարությամբ: Ուսումնասիրել է կրկնակի աստղերն ու մասնավորապես Մարս մոլորակը: 1851–ին հայտնաբերել է Գեսպերիա աստղակերպը (№ 69): Ս–ի անունով կոչվել են խառնարաններ Լուսնի և Մարսի վրա, ինչպես նաև Մարսի վրա իջեցվող սարքը (2016):

ՍԿԻԱՄԿՈՊԻԱ (< հուն. skia – ստվեր և ***...ակոպիա***), աչքի կլինիկ. լուսաբեկման որոշման մեթոդ (աչքի հարթ հայելու օգնությամբ)՝ բբի շրջանում շարժվող ստվերի օգնությամբ:

ՍԿԻԼԼԱ (Սցիլլա) **ԵՎ ՔԱՐԻԲԴԱ**, հրեշներ հուն. դից–յան մեջ, որոնք ապրել են նեղուցի երկու կողմերում և կործանել են նավարկող նավերը: «Սկիլլայի և Քարիբդայի միջև» արտահայտությունը փխր. իմաստով նշանակում է միաժամանակ ենթարկվել վտանգների տարբեր կողմերից:

ՍԿԻԼՈՒՐ, Սկյութիայի թագավոր՝ մ. թ. ա. II դ–ում՝ Սկյութ. պետության ծաղկման ժամանակաշրջանում: Նվաճել է Ղրիմի ափերի մեծ մասը, անհաջող պատերազմ է վարել ***Միհրդատ VI Եվպատորի*** դեմ:

ՍԿԻԿԴԱ, (նախկին՝ Ֆիլիպվիլ), ք. Ալժիրի հս–արլ–ում, համանուն վիլայեթի և օկրուգի վարչ. կենտրոնը: Բն.՝ 169 հզ. (2010): Նվինզստ Միջերկր. ծովի ափին: Կան նավթաքիմ., նավթավերամշակման, աննդի արդ–յան ձեռն–ներ, ձկնորսություն:

ՍԿԻՀ, փոքր նստուկով, բարձր պատվանդանով և կափարիչով (մաղզմա) արծաթե եկեղեց. անոթ, որի մեջ լցնում են գինի՝ պատարագի ժամանակ նվիրագործելու համար: Ս–ները պատել են բուս. զարդանախշերով, դրվագել կամ փորագրել 12 առաքյալների պատկերները:

ՍԿԻՆ ԷՖԵԿՏ (անգլ.՝ skin – մաշկ, թաղանթ), **մակերևութային էֆեկտ**, փոփոխ. հոսանքի և նրա հետ կապված մագնիս. դաշտի անհավասարաչափ բաշխումը հաղորդչի հատույթով: Բավական բարձր հաճախականությունների դեպքում հոսանքն անցնում է հաղորդչի մակերևութ. բարակ շերտով (մակաշերտով) և գործնականում բացակայում է խորքում:

ՍԿԻՊԱ, (Schipa) Տիտո (1888–1965), իտալացի երգիչ (քնար. տենոր): ***Բելկանտոյի*** վարպետ: Լավագույն դերերգերից են՝ Ալմավիվա (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»), Վերթեր (Ժ. Մասնեի «Վերթեր») ևն: Հեղինակ է «Արքայադուստր Լիանա» (1929) օպերետի և այլ գործերի: Նկարահանվել է կինոյում:

ՍԿԻՊԻՈՆ ԱՍԻԱՑԻ (Scipio Asiaticus), հռոմեացի զորավար՝ մ. թ. ա. 190–ին: ***Մագնեսիայի ճակատամարտում*** պարտության է մատնել ***Անտիոքոս III***–ին:

ՍԿԻՊԻՈՆ ԱՖՐԻԿԱՅԻ Ավագ (Scipio Africanus Major, մ. թ. ա. մոտ 235–մոտ 183), հռոմեացի զորավար: Պունիկյան 2–րդ պատերազմում Զամայի մոտ ջախջախել է (202) ***Աննիբալի*** զորքին:

ՍԿԻՊԻՈՆ ԱՖՐԻԿԱՅԻ Կրտսեր (Scipio Africanus Junior, մ. թ. ա. մոտ 185–129), հռոմեացի զորավար: 146–ին գրավել ու ավերել է Կարթագենը, որով ավարտվել է Պունիկյան 3–րդ պատերազմը:

ՍԿԼԵՐԵՆՔԻՄ (< ***սկլերո...*** և հուն.՝ enchyma – լիքը, այստեղ՝ հյուսվածք), բույսի մեխ. հյուսվածք՝ կազմված թելերից և սկլերեիդներից հիմնականում՝ ցողուններում և տերևներում: Որոշ բույսերի (կտավատ, կանեփ ևն) Ս. մանածագործ. հումք է:

ՍԿԼԵՐՈ... (հուն.՝ skleros – կարծր, պինդ), բարդ բառերի մաս. նշանակում է կարծրացում, պնդացում (օր.՝ սկլերոզ, սկլերոֆիտ ևն):

ՍԿԼԵՐՈՋ, տես *Կարծրախիլ*:

ՍԿԼԵՐՈՊՐՈՏԵԻՆՆԵՐ, կենդանիների և մարդու շարակց. հյուսվածքի հենքը կազմող թելքային սպիտակուցներ (կոլագեն, կերատիններ, էլաստին ևն):

ՍԿԼԵՐՈՏԻՆԻՈՋՆԵՐ, բույսերի հիվանդություններ: Հարուցիչներն ախտածին սնկերն են: Վնասակար են արևածաղկի, գազարի, կաղամբի, աշնանացան հացաբույսերի Ս. կամ սպիտակ փտումը:

ՍԿԼԵՐՈՖԻՏՆԵՐ (< *սկլերո*... և հուն.՝ phyton – բույս), հաստ, գոլորշիացումը խոչընդոտող կուտիկուլայով ծածկված, կոշտ տերևներով երաշտադիմացկուն բույսեր (սոճի, փետրախոտ, շյուղախոտ ևն):

ՍԿԼԻՖՈՍՈՎՍԿԻ Նիկոլայ Վասիլևիչ (1836–1907), ռուս. վիրաբույժ: Աշխ-ները վերաբերում են որովայնի խոռոչի և ռազմադաշտ. վիրաբուժությանը: Առաջարկել է մի շարք վիրահատություններ (կոչվում են նրա անունով): Նպաստել է ռուս. վիրաբուժության մեջ աննեխության և հականեխության սկզբունքների ներդրմանը:

ՍԿԼՈԴՈՎՍԿԱՅԱ-ԿՅՈՒՐԻ (Sklodowska-Curie) Մարիա (1867–1934), լեհ ֆիզիկոս և քիմիկոս: Ռադիոակտիվության տեսության ստեղծողներից: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. (1907), ԽՍՀՄ ԳԱ պատվ. (1926) անդամ: 1891-ից՝ Ֆրանսիայում: Հայտնաբերել է թորիումի ռադիոակտիվությունը (1898), ամուսնու՝ Պ. *Կյուրիի* հետ՝ պոլոնիումը և ռադիումը (1898), ներմուծել է «ռադիոակտիվություն» տերմինը (Նոբելյան մրց., 1903, Պ. Կյուրիի և Ա. Ա. *Բեքերելի* հետ՝ ֆիզիկայի գծով): Ստացել է (1910, Ա.-Լ. *Դեբյոռնի* հետ) մետաղ. ռադիում և ուսումնասիրել նրա հատկությունները (Նոբելյան մրց.՝ քիմիայի գծով, 1911): Աշակել է ռադիոակտիվ չափումների եղանակներ, առաջինն է բժշկ. նպատակներով կիրառել ռադիոակտիվ ճառագայթումը:

Հրաժարվել է (2 անգամ) Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» շքանշանից:

ՍԿՅՈՒԹԵՐԵՆ, սկյութների լեզուն. պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի հնդիրան. ճյուղի իրան. լեզուներին:

ՍԿՅՈՒԹՆԵՐ (լատ.՝ Scythai, աքքադ.՝ iškuzaia, ինքնանվանումը՝ սկոլոտներ), հին քոչվոր ժողդ: Պատկանում է իրան. լեզվախմբին: Մ. թ. ա. VIII դ–ի վերջերին կամ VII դ–ի սկզբներին գաղթել են Հս. Կովկաս և Հս. Մերձսևծովյան շրջաններ: Մ. թ. ա. 670-ական թթ–ից ներխուժել են Առաջավոր Ասիա. 630–620-ական թթ–ին հասել են գրեթե Եգիպտոս: Մ. թ. ա. V–IV դդ–ում յուրացրել են Հս. Մերձսևծով. շրջանների տափաստան. ու անտառատափաստան. տարածքները: Ղրիմում ստեղծվել են Սկյութ. պետություն (մ. թ. ա. III դ.–ում. թ. III դ–ի կեսեր)՝ Սկյութ. Նեապոլիս մայրաքաղաքով: Բաժանվել են մի շարք ցեղերի, այդ թվում՝ «թագավորական Ս.», որոնք գերիշխել են մի շարք այլ ժողդ–ների: Մի քանի հին հույն հեղինակներ «ասիացի սկյութներին» կոչել են *սակներ*: Որոշ միջնադար. պատմաբանների աշխ–ներում «Ս.» անունն օգտագործվում է Արլ. Եվրոպայի այլ ժողդ–ների համար. պահպանվել է իրենց տարածքների անվան մեջ՝ Սկյութիա:

ՍԿՅՈՒՐՈՒՆՄԱՆՆԵՐ (Sciuridae), կրծողների կարգի կաթնասունների ընտանիք: Հայտնի է մոտ 230 տեսակ՝ տարածված լայնորեն: Ս. են սկյուռները, շերտասկյուռները, արջամկները, գետնասկյուռները, մարգագետնային շինկը ևն:

ՍԿՅՈՒՌՆԵՐ (Sciurus), սկյուռանմանների ընտանիքի կաթնասուն կենդանիների սեռ: Մարմնի երկ.՝ 20–30 *սմ*, պոչը՝ երկար, փափկամազ: Հայտնի է 40 տեսակ: ՀՀ–ում հանդիպում է ***պարսկական սկյուռը*** և ***փոքրասիական գետնասկյուռը***: Սովոր. Ս. (վեկշա) արդյունագործ. կենդանի է:

ՍԿՅՈՒՏԱՐԻ ՃԵՄԱՐԱՆ, հայ աշխարհիկ առաջին ճեմարանը: Հիմնադրվել է 1838–ին Կ. Պոլսի Սկյուտար թաղամասում: 1840–ին ճեմարանում ստեղծվել է Միաիական ընկ., որն ստանձնել է ճեմարանի հոգաբարձությունը: Թուրք. կառ–յունը ոչ միայն չի հաստատել այն, այլև ձերբակալել է նրա անդամներին: 1841–ին փակվել է, վերաբացվել է 1846–ին, 1859–ին նյութ. և քաղ. ծանր կացության պատճառով վերջնականապես փակվել է:

ՍԿՈԲԼԻԿՈՎԱ Լիդիա Պավլովնա (ծ. 1939), ռուս մարզիկ (արագընթաց չմշկավազք): ԽՍՀՄ ս. վ. վ. (1960): Ձմեռ. օլիմպ. խաղերի 6–ակի (1960–ին՝ 1500 և 3000 *մ*, 1964–ին՝ 500, 1000, 1500 և 3000 *մ*), աշխարհի ու ԽՍՀՄ բազմակի (1960–65) չեմպիոն:

ՍԿՈԼԱ (Scola) Էտտորե (1931–2016), իտալացի կինոռեժ., սցենարիստ: Նկարահանել է «Թույլ տվեք ներկայանալ՝ Ռոկկո Պապալեո» (1971), «Գարշելիները, կեղտոտները, կատաղիները» (1976), «Ժամը քանիսն է» (1989) և այլ կատակերգ. ֆիլմեր: Դրամատիկ. երանգներ կան «Սիրային կիրք» (1981), «Պարահանդես» (1983), «Հռոմի մարդիկ» (2003) և այլ կինոնկարներում:

ՍԿՈԼԻԱՆԵՐ (Scoliidae), *կրևտների* ընտանիք: Երկ.՝ մինչև 4,5 *սմ*: Հայտնի է մոտ 450 տեսակ: Թունավոր են: Արևադարձներում խոշոր Ս–ի խայթոցը կարող է մահացու լինել:

ՍԿՈԼԻՈՋ (հուն.՝ Skoliosis – ծռում), ողնաշարի կողմնային ծռումը ռախիտի, անկանոն կեցվածքի, ողնաշարի վնասվածքների, նյարդ. համակարգի որոշ հիվանդությունների և այլ դեպքերում: Սովորաբար զարգանում է մանկ. տարիքում: Կանխարգելումը՝ մարմնամարզություն, հարմարավետ կահույք, շարժուն խաղեր:

ՍԿՈԼՈՊԵՆԴՐԱՆԵՐ (Scolopendra), **օձաանդրներ**, շրթնոտանիների դասի հոդվածոտանիների սեռ: Երկ.՝ մինչև 30 *սմ*: Հայտնի է մոտ 900 տեսակ: Արևադարձ. խոշոր Ս–ի խայթոցը կարող է մահացու լինել:

ՍԿՈՄՈՐՈԽՆԵՐ, թափառաշրջիկ դերասաններ Հին Ռուսիայում: Հայտնի են XI դ–ից, առավել տարածվել են XV–XVII դդ–ում, XVIII դ–ում՝ հետզհետե անհետացել: Հանդես են եկել որպես երգիչներ, երաժիշտներ, բեմ. փոքր տեսարանների դերակատարներ, վարժեցնողներ, ակրոբատներ:

ՍԿՈՄՈՐՈԽՈՎ Նիկոլայ Միխայլովիչ (1920–1994), խորհրդ. զորապետ, ավիացիայի մարշալ (1981): ԽՄ հերոս (1945, կրկնակի): ՀՄՊ–ի ժամանակ կործանիչ ավիացիայում եղել է սավառնակախմբի հրամ.: Մասնակցել է 143 օդ. մարտերի, անձամբ խփել է 46, խմբի հետ՝ 8 ինքնաթիռ:

ՍԿՈՆԵ (Skone), թ–կղզի Շվեդիայի հվ–ում: Երկ.՝ շուրջ 100 *կմ*, բարձր.՝ մինչև 226 *մ*: Հս–ում Մալմո ք. է: Մինչև 1658–ը պատկանել է Դանիային:

ՍԿՈՉԻՆՍԿԻ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (1874–1960), հանք. գործի բնագավառի ռուս. գիտնական: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1935): Սոց. աշխ. հերոս (1954): Աշխ–ները վերաբերում են հանք. օդաբանության և քարածխի հանքահորերում անվտանգության տեխնիկայի հարցերին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950, 1951):

ՍԿՈՊԱՍ, մ. թ. ա. IV դ–ի հույն քանդ., ճարտ.: Պահպանվել է *Հալիկառնասի դամբարանի* գոտին՝ «Ամազոնամախիա» բարձրաքանդակները (մարմար, մ. թ. ա. մոտ 350, որոշ հատվածներ՝ Բրիտ. թանգարանում): Բազմաթիվ գործեր հայտնի են հռոմ. կրկնօրինակներից («Փոտոս» ևն): Գործերն աչքի են ընկնում դինամիկ կոմպոզիցիայով:

...ՍԿՈՊԻԱ (հուն.՝ skopeo – դիտել), ...**դիտում**, բարդ բառերի մաս. նշանակում է **դիտում**, աչքով կատարվող հետազոտություն (օր.՝ սպեկտրոսկոպիա՝ սպեկտրադիտում):

ՍԿՈՊՅԵ, **Սկոպլե** (Ckonje, Skoplje), *Սակեդոնիայի* մայրաքաղաքը (1946–ից)՝ Վարդար գետի ափին: Բն.՝ 483 հզ., ագլոմերացիայում՝ 625 հզ–ից ավելի (2010): Տրանսպորտ. հանգույց է, ունի օդանավակայան: Զարգացած են մեքենաշինությունը, մետաղագործությունը, քիմ., սննդի, ծխախոտի, կաշվի–կոշիկի, տեքստիլ արդ–յան ճյուղերը, նավթավերամշակումը: Գործում են Մակեդոնիայի ԳԱ–ն, համալսարանը, պատկերասրահը, հնագիտ. և ազգագր. թանգարանը: Որպես քաղաք՝ հայտնի է Հուստինիանոսի ժամանակներից: VII դ–ում բնակեցրել են սլավոնները: IX դ–ից Առաջին Բուլղ. թագավորության, ապա՝ Արմ. Բուլղ. թագավորության, 1282–ից Սերբ. պետության կազմում էր: 1331–55–ը եղել է Սերբա–հուն. թագավորության մայրաքաղաքը, 1392–1912–ին՝ թուրք. իշխանության տակ, 1913–ից՝ Սերբիայի, 1918–ից՝ Սերբերի, խորվաթների և սլովենների թագավորության, 1926–ից՝ Հարավսլավիայի կազմում: Ս–ում կան վաղրյուզ. ամրոց, թուրք. մինարե, XV–XX դդ–ի կառույցներն ավերվել են 1963–ի երկրաշարժից, վերականգնվել են 1960–ական թթ–ին: Կառուցվել է քաղաքի նոր կենտրոնը (նախագիծը՝ ճապոնացի ճարտ. Կ. Տանգեի):

ՍԿՈՊՈԼԱՄԻՆ, ալկալոիդ, ստացվում է շիկատակի (մահամորմ) սկոպոլիայից և մորմազգի այլ բույսերից:

ՍԿՈՊՈԼԻՈՒՄ, մորմազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 4–6 տեսակ՝ Եվրասիայի բարեխառն գոտում, Կովկասում՝ 1 (դեղաբույս է, պարունակում է ***սկոպոլամին*** ալկալոիդ, ատրոպին ևն), գեղազարդիչ է:

ՍԿՈՎՈՐՈԴԱ Գրիգորի Սավիչ (1722–1794), ուկրաինացի փիլ., բանաստեղծ, մանկավարժ: Ս–ի ստեղծագործությունները տարածվել են ձեռագրերով: Փիլ. երկխոսություններում և աշխ–ներում աստվածաշնչ. խնդրակարգը միահյուսվում է պլատոնականության և ստոիցիզմի գաղափարներին: Մարդկային գոյության իմաստը՝ ըստ Ս–ի, ինքնաճանաչողության սխրանքն է:

ՍԿՈՏ (Scott) Դեվիդ (ծ. 1932), ամերիկացի աստղագնաց: «Ապոլոն–15» տիեզերանավի հրամ.: Լուսին հասած 12 աստղագնացներից է և առաջինը, որ ինքնագնացով շարժվել է Լուսնի վրա: 5 անգամ դուրս է եկել բաց տիեզերք (ռեկորդը պահպան-

վել է 13 տարի): 1971-ին Լուսնի մակերևույթին ամրացրել է «Ընկնող աստղագնացը» կոմպոզիցիան, որը դեռևս միակ գեղ. ստեղծագործությունն է Լուսնի վրա:

ՍԿՈՏ Ռոբերտ Ֆոլկոն (1868–1912), անգլիացի բևեռախույզ, Անտարկտիդայի հետազոտող: 1901–04-ին ղեկավարել է Անտարկտիկ. արշավախումբը, հայտնաբերել հետագայում Էդուարդ VII արքայի անունով կոչված թ-կղզին, ուսումնասիրել Վիկտորիա երկիրը և շարժվելով Ռոսսի շելֆ. սառցադաշտով հասել մինչև հվ. լայն-յան 82º17′: 1911–12-ին 2-րդ արշավախմբով հասել է Հվ. բևեռ (33 օր ուշ, քան Ռ. *Ամունդսենը*): Զոհվել է վերադարձի ճանապարհին:

ՍԿՈՏ, Սքոթ, Վալտեր (1771–1832), անգլիացի գրող: Անգլ. ռեալիստ. վեպի հիմնադիրը: Հավաքել և կազմել է «Շոտլանդական սահմանի երգերը» (հ. 1–3, 1802–03) շոտլանդ. ժող. բալլադների ժող–ը, որտեղ ներառել է նաև իր գործերը: Հեղինակ է «Վերջին մենեստրելի երգը» (1805), «Լճի լեդին» (1810, հայ.՝ 1912) և այլ պոեմների, «Ուեվըլի» (1814) առաջին պատմավեպի, «Գայ Մանրինգ» (հ. 1–3, 1815), «Հսավաճառանոց» (հ. 1–3, 1816), «Պուրիտաններ» (1816), «Ռոբ Ռոյ» (1818), «Լամմերմուրի հարսնացուն» (1819), «Սուրբ Ռոնանի ջրերը» (հ. 1–3, 1824) և այլ վեպերի, «Այվենհո» (հ. 1–3, 1820, հայ.՝ 1975), «Քենիլվրդ» (հ. 1–4, 1821), «Քվենտին Դորվարդ» (հ. 1–3, 1823, հայ.՝ 1939), «Վուդսթոք» (հ. 1–3, 1826) և այլ պատմավեպերի, «Նապոլեոն Բոնապարտի կյանքը» (հ. 1–9, 1827), «Լորդ Բայրոնի մահը» (1824) կենսագր. վեպերի, XVIII դ–ի գրողներին նվիրված «Վիպագիրների կենսագրությունը» (հ. 1–4, 1821–24) երկի:

ՍԿՈՐԻՆԱ Ֆրանցիսկ (մոտ 1486–1541), բելառուս տպագրիչ և լուսավորիչ: 1517–1519-ին Պրահայում լույս է ընծայել Սաղմոսարան և Աստվածաշնչի 19 առանձին գրքեր (առաջին անգամ՝ սլավոն. թարգմ–յամբ): 1520-ական թթ–ի սկզբին Վիլնյուսում հիմնադրել է առաջին տպարանը: Ս. նպաստել է բելառուս. գր. լեզվի ձևավորմանը:

ՍԿՈՐՈԲՈԳԱՏՈՎ Կոնստանտին Վասիլևիչ (1887–1969), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1953): 1936-ից՝ Լենինգրադի Պուշկինի անվ. դրամայի թատրոնի դերասան (1951-ից՝ տնօրեն): Դերերից են՝ Գրադոբոև (Ա. Ն. Օստրովսկու «Ջերմ սիրտ»), Դոստիգաև (Մ. Գորկու «Դոստիգաևը և ուրիշները») ևն: Նկարահանվել է կինոյում («Պուգաչով», «Պիրոգով» ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1948, 1949, 1951-ին՝ կրկնակի):

ՍԿՈՐՈՊԱԴՍԿԻ Պավել Պետրովիչ (1873–1945), ուկրաինացի ռազմ., քաղ. և պետ. գործիչ, գեն–լեյտ. (1916): ԱՀՊ–ում գլխավորել է դիվիզիաներ, այնուհետև՝ կորպուս: 1917–ի հոկտ–ից՝ Կենտր. Ռադայի զինվ. կազմավորումների ղեկ.: Ուկրաինայի հետման (1918), հռչակել է «Ուկրաինայի տերության» ստեղծումը: 1918–ից՝ վտարանդի (Գերմանիա):

ՍԿՈՐՍԵԶԵ (Scorsese) Մարտին (ծ. 1942), իտալացի կինոռեժ., սցենարիստ (ԱՄՆ): Նկարահանել է «Ալիսան այլևս այստեղ չի ապրում» (1974), «Տաքսու վարորդը» (1976), «Նյու Յորք, Նյու Յորք» (1977), «Վերջին վալսը» (1978), «Կատաղած ցուլ» (1981), «Կատակերգության արքան» (1982), «Քրիստոսի վերջին փորձությունը» (1988), «Կազինո» (1995), «Նյու Յորքի ավազակախմբերը» (2003), «Անիծվածների կղզին» (2010), «Ուոլ Սթրիթի գայլը» (2013) ևն: Ս–ին է նվիրված «Կինոն իմ կյանքն է» (1978) վավերագր. ֆիլմը: «Օսկար» մրց. (2007):

ՍԿՈՈՒ (Skou) Յենս Քրիստիան (ծ. 1918), դանիացի կենսաքիմիկոս: Հետազոտել է նյութափոխանակության կարևոր փուլերը վերահսկող՝ Na/K – կախյալ ադենոզինեոֆոսֆատազի հատկությունները: Ս–ի աշխ–ներով դրվել է կենդանի բջիջներում էներգիայի փոխակերպման մեխանիզմների բացահայտման հիմքը: Նոբելյան մրց. (1997):

ՍԿՈՖԻԼԴ (Scofield) Պոլ (1922–2008), անգլիացի դերասան: 1942-ից հանդես է եկել Բիրմինգհեմի, Էյվոնի Ստրատֆորդի, Լոնդոնի թատրոններում, խաղացել Վ. Շեքսպիրի պիեսներում, համագործակցել Պ. *Բրուքի* հետ (Համլետ՝ Վ. Շեքսպիրի «Համլետ»): Նկարահանվել է կինոյում («Գնացք», «Բոլոր ժամանակների մարդը» ևն):

ՍԿՐԱՈՒՊ (Skraup) Զդենկո Հանս (1850–1910), ավստրիացի քիմիկոս: Աշխ–ները վերաբերում են քինինի խմբի ալկալոիդների, ածխաջրերի և սպիտակուցների քիմիային: Առաջարկել է (1880) քինոլինի սինթեզի եղանակը (*Սկրաուպի ռեակցիա*): Լիբենի մրց. (1886):

ՍԿՐԱՈՒՊԻ ՌԵԱԿՑԻԱ, քինոլինի, նրա նմանակների և ածանցյալների սինթեզն անիլինի, նրա համապատասխան նմանակների ու ածանցյալների և գլիցերինի փոխազդեցությամբ՝ հիդրատացնող ու օքսիդացնող նյութերի առկայությամբ: Ս. ռ. կիրառվում է դեղանյութեր և լուսազգայունաներարներ ստանալու համար:

ՍԿՐԻՆՍԿԻ Ալեքսանդր Նիկոլաևիչ (ծ. 1936), ռուս. ֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (1970): ՌԳԱ ՍԲ միջուկ. ինստ–ի տնօրեն (1977–2015): Աշխ–ները վերաբերում են բարձր էներգիաների ֆիզիկային, լիցքավորված մասնիկների արագացման տեխնիկային, սինքրոտրոն. ճառագայթմանը: Հանդիպակաց փնջերի եղանակի հեղինակներից է: Մշակել է էլեկտրոն. սառեցման և բևեռացված փնջերի ստացման եղանակներ:

Լենինյան (1967), ԽՍՀՄ (1989), ՌԴ (2001, 2005) Պետ., ՌԳԱ Վ. Ի. Վեքսլերի (1991), Դեմիդովյան (1997), Ա. Պ. Կարպինսկու (2002, Գերմանիա, Ա. Տեպֆերի հիմնադրամ) անվ. մրց–ներ:

ՍԿՐԻՊԿՈ Նիկոլայ Սեմյոնովիչ (1902–1987), ռուս ռազմ. գործիչ: ԽՍՀՄ ավիացիայի մարշալ (1944): ՀՄՊ–ում հեռավոր գործողության ավիացիայի փոխհրամ. և բանակի հրամ–ի 1-ին տեղակալ: 1950–69-ին՝ ԽՍՀՄ ՌՕՈՒ տրանսպորտաղեսանտ. և ռազմատրանսպորտ. ավիացիայի հրամ.:

ՍԿՐՅԱԲԻՆ Ալեքսանդր Նիկոլաևիչ (1871/72–1915), ռուս. կոմպոզիտոր, դաշնակահար: Երաժշտ. լեզվի (առավելապես՝ հարմոնիայում) նորարար է, զարգացրել է գունավոր երաժշտության գաղափարը [«Պրոմեթևս» («Կրակի պոեմ») դաշնամուրի և երգչախմբի համար, 1910, ևն], հեղինակ է նաև «Աստվածային պոեմ» (3-րդ սիմֆոնիա, 1904), «Էքստազի պոեմ» (1907) նվագախմբային երկերի, սոնատների, պոեմների, պրելյուդների և այլ գործերի:

ՍԿՐՅԱԲԻՆ Կոնստանտին Իվանովիչ (1878–1972), ռուս. հելմինթոլոգ, գիտ. դպրոցի հիմնադիր: ԽՍՀՄ ԳԱ (1939), ՀամԳԳԱ (1935), ԲԳԱ (1944) ակադ.: Սոց. աշխ. հերոս (1958): Աշխ–ները վերաբերում են մարդու և գղտ. կենդանիների հելմինթների ձևաբանությանը, կարգաբանությանը, էկոլոգիային: Առաջինն է առաջադրել նրանց ախտածին դերի և ճիճվաթափության (դևաստացիա) մասին տեսակետ:

ԽՍՀՄ Պետ. (1941, 1950), Լենինյան (1957) մրց–ներ:

ՍԿՈՒԼՄԵ (Skulme) Օտտո (Օտիս, 1889–1967), լատիշ գեղանկարիչ, բեմանկարիչ: Լատվ. ԽՍՀ ժող. նկարիչ (1959): ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի թղթ. անդամ (1954): Հեղինակ է բնանկարների, ժանր. տեսարանների («Թափառական երաժիշտը», 1928), պատմ. թեմաներով նկարների («Կաուգուրցինների ապստամբությունը», 1945): 1926–47-ին՝ Ռիգայի Յ. Ռայնիսի անվ. լատվ. գեղ. թատրոնի գլխ. նկարիչ (Յ. Ռայնիսի «Կրակ և գիշեր», 1947):

ԽՍՀՄ Պետ. մրց. (1947):

ՍԿՈՒԼՏԵ (Skulte) Աղոլֆս (1909–2000), լատիշ կոմպոզիտոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1979): Հեղինակ է օպերաների, բալետների («Գարնանային փոթորիկ», 1967, ևն), կանտատների, սիմֆոնիաների (1954–86), կամեր., խմբերգ. և այլ գործերի: ԽՍՀՄ Պետ. մրց–ներ (1950, 1951):

ՍԿՈՒՆՍ (Mephitidae), **շերտավոր սկունս, ժանտաքիս**, կզաքիսազգիների ընտանիքի կաթնասուն կենդանի: Մարմնի երկ.՝ մինչև 38, պոչինը՝ մինչև 44 *սմ*: Ապրում է Հս. Ամերիկայում: Պաշտպանվում է հետանցք. գեղձերի գարշահոտ արտազատուկը ցայտեցնելով: Բազմացնում են ձագ–մաներում (թանկարժեք մորթու համար):

ՍԿՈՒՊԱ, (Skupa) Յոզեֆ (1892–1957), չեխ դերասան, ռեժ., տիկնիկների թատրոնի նկարիչ: ՉԽՍՀ ժող. արտիստ (1948): 1930-ին հիմնադրել է Սպեյբլի և Գուրվինեկի տիկնիկ. թատրոնը, որի գլխ. հերոսները (տիկնիկները) ստեղծվել են Ս–ի էսքիզներով: 1933–57-ին՝ Տիկնիկավարների միջազգ. միության նախագահ: ՉԽՍՀ Պետ. մրց. (1955):

ՍԿՈՒՏԵՂ, շրջանաձև, քառանկյուն և ձվաձև, 2 բռնակով կամ առանց դրանց արծաթե, պղնձե, փայտե զարդանախշ (երկրչփ., բուս., կենդ.) մեծ ափսե: Հիմնականում օգտագործվում է որպես մատուցարան: Ս. պատրաստող հայտնի հայ վարպետներ գործել են Զուղայում, Վանում, Թոքատում, Երզնկայում, Կարինում, Ալեքսանդրապոլում և այլուր:

ՍԿՈՒՏԵՐ (անգլ.՝ scooter, < scoot – սլանալ), 1. միատեղ մարզ. սահանավակ՝ կախովի շարժիչով (գլիսեր): 2. Մոտոռոլլերի տարատեսակ՝ նստատեղի տակ տեղադրված շարժիչով, որի ծավալը սովորաբար չի գերազանցում 50 *սմ*³: Մի շարք երկրներում նույնացվում են մոպեդներին, և վարորդ. իրավունք ու գրանցում չեն պահանջվում:

ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ, արագ գիր, որ հիմնված է նշանների, կրճատված բառերի և բառակապակցությունների հատուկ համակարգի կիրառման վրա: Հայտնի էր դեռևս վաղ անցյալում (մ. թ. ա. 350, Աթենք): Հայկ. ինքնուրույն Ս–յան հեղինակը Շաքե Ծերունյանն է, կատարելագործել է Պողոս Վարդանյանը (հաստատվել է 1957-ին):

ՍՂԵՐԴ, Սղերտ, ք. Արմ. Հայաստանի Բիթլիսի նահանգ–ում՝ Բաղեշ (Բիթլիս)–Զեզիրե–Մոսուլ առևտր. ճանապարհին:

Համանուն գվո–ի և գվոկ–ի կենտրոնը: Մ. թ. ա. 401–ին Ս–ով են անցել Քսենոփոնը և 10 հզ. հույն: Եղել է Աղձնիք նահանգ–ի Արզան (Աղձն) գվո–ի կազմում: XX դ–ի սկզբին Ս. ունեցել է 500–550 տուն հայ բն. (ավելի քան 5 հզ. հոգի): 1896–ին Ս–ի և շրջակայքի հայերի զգալի մասը կոտորվել կամ բռնի մահմեդականացվել է:

Մեծ եղեռնի ժամանակ Ս–ի հայերը բռնի տեղահանվել են և կոտորվել: Առանձին խմբեր ինքնապաշտպ. մարտերով կարողացել են փրկվել: Վերապրածները 1916–ին ռուս. առաջապահ զորամասերի հետ հեռացել են Արլ. Հայաստան: Ներկայում Թուրքիայի Սղերդի իլի կենտրոնն է:

ՍՂՆԱԽ, ք. Վրաստանում: Հիշատակվում է XVIII դ–ի սկզբից: 1760–ական թթ–ին, երբ Ղարաբաղից գաղթած մեծ թվով հայեր հաստատվել են Ս–ում, Վրաց Հերակլ II թագավորը պարսպապատել է այն և մտցրել Քարթլի–Կախեթի «թագավորական քաղաքների» ցուցակի մեջ: 1802–ին ուներ շուրջ 1000 բն. (հիմնականում՝ հայ): XVIII դ–ի վերջին Ս–ի կառավարիչ (մամասախլիս) է եղել հայազգի Թեյմուրազ Թեյմուրազովը: XIX դ–ի վերջ–XX դ–ի սկզբին Ս–ում գործել են հայկ. 3 եկեղեցի, 2 դպրոց, 1 տպարան:

Ս–ի կենտրոնում կանգուն է հայկ. Սբ Գևորգ եկեղեցին (XIX դ.):

ՍՂՆԱԽՆԵՐ, Արլ. Հայաստանի լեռն. բերդերի և բնական ամրությունների անվանումը XVIII դ–ի 1–ին կեսին: Ղարաբաղի 5 մելիքություններից (տես ***Խամսայի մելիքություններ***) յուրաքանչյուրն ունեցել է մեծ և փոքր Ս., որոնց մի մասը (Գտիչ–Գորոզ, Ջրաբերդ, Կաչաղակաբերդ, Շիկաքար–Քարագլուխ–Շոշ) հայտնի բերդամրոցներ էին դեռևս վաղ միջնադարում: Կառուցվել են նաև նորերը (Գյուլիստանի, Ավետարանոցի, Քոչիզի ևն): Ս–ի զինական ուժերը գլխավորել է Մեծ սղնախը՝ ***Եսայի Հասան–Ջալալյանի*** և ***Ասան Յուզբաշու*** գլխավորությամբ: Մեծ սղնախի դեր է ունեցել նաև Ջրաբերդը, որը փոխանցվել է Քարագլխին (Շոշի բերդ): 1724–ի գարնանը Ասան Յուզբաշին 2–հզ–անոց զորախմբով Շոշից օգնության է շտապել թուրք. լծի դեմ պայքարի ելած ***Դավիթ Բեկին***: Ս–ի պայքարը շարունակվել է մինչև 1728–29–ը, երբ Եսայի Հասան–Ջալալյանի մահից (1728) հետո մյուս ղեկ–ներն անցել են Ռուսաստան:

ՍՂՈՅԱԿՏՈՒՑ (Tucana), Հվ. կիսագնդի համաստեղություն:

ՍՂՈՅԱԿՏՈՒՑ ԲԱԴԵՐ (Mergus serrator), բադերի ընտանիքի թռչունների սեռ: Երկ.՝ մինչև 80 *սմ*: Հայտնի է 7 տեսակ. 5–ը՝ Հս. կիսագնդում, 1–ը՝ Հվ. Ամերիկայի արևադարձ. մասում, 1–ը՝ Օքլենդի կղզիներում (Նոր Զելանդիա): ՀՀ–ում հանդիպում է 2 տեսակ (սղոցակտուց բադը և մեծ սղոցակտուց բադը): Մնվում են հիմնականում ձկներով, լավ սուզվում են: Որսաթռչուններ են: Թեփուկավոր բադը գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՍՂՈՅԱՁԿՆԵՐ (Pristidae), **սղոցաքիթներ**, կատվաձկների վերնաընտանիքի ձուկ. ձկների ընտանիք: Քիթը նման է երկկողմանի սղոցի (այստեղից՝ անվանումը), որով փխրեցնում են բնահողը՝ կեր հայթայթելիս: Երկ.՝ մինչև 6 *մ*, կ. զ.՝ 2,4 *կգ*: Հայտնի է 8 տեսակ՝ արևադարձ. և մերձարևադարձ. ծովերում, երբեմն՝ քաղցրահամ ջրերում:

ՍՂՈՅՈՂՆԵՐ (Sawfly), նստափորայինների ենթակարգի թաղանթաթևավոր միջատների մի շարք ընտանիքների ընդհ. անվանումը: Ձվադիրը նման է սղոցի (այստեղից՝ անվանումը): Հայտնի է 5 հզ., ՀՀ–ում՝ 300 տեսակ՝ տարածված հիմնականում անտառներում: Որոշ տեսակներ անտառի և գղտ. մշակաբույսերի վնասատուներ են. օր.՝ կարմրագլուխ (երկ.՝ մոտ 1 *սմ*), կոլզայի, բալենու, հացազգիների և այլ Ս.:

ՍՄԱՐԹ (Smart) Քրիստոֆեր (1722–1771), անգլիացի երգիծաբան և կրոն. բանաստեղծ: Հեղինակ է «Երգ Դավիթին» (1763) պոեմի, «Jubilate Agno» («Ուրախացե՛ք գառնով», 1759–63, հրտ.՝ 1939) պոեմ–հանրագիտարանի: Թարգմանել է Սաղմոսների գիրքը, լատ. դաս. հեղինակների գործերից:

ՍՄԲԱԿ, նեղ երային գոյացություն՝ հիմնականում սմբակավոր կաթնասունների մատների ծայրերին. տեսակափոխված եղունգներ են: Ծառայում են տեղաշարժմանը՝ հիմնականում պինդ գրունտի վրա:

ՍՄԲԱԿԱՎՈՐՆԵՐ (Ungulata), կաթնասունների վերնակարգ: Մեծամասնությանը բնորոշ է սմբակների առկայությունը: Չափերը փոքր են (դամաններ, որոշ այծքաղներ) կամ մեծ (փղեր): Հայտնի է 6 կարգ՝ միասմբակավորներ, երկկճղակավորներ, կոշտուկոտներ, կնճիթավորներ, ծովակովեր (սիրենաներ) և դամաններ:

ՍՄԲԱՏ (1276–1311), Կիլիկիայի հայոց թագավոր՝ 1296–98–ին՝ ***Հեթումյանների*** տոհմից: Ավագ եղբայրների՝ Հեթում Բ թագավորի ու Թորոսի ապաշնորհ քաղյունից դժգոհ՝ խլել է գահը և օծվել թագավոր: Ս–ին տապալել և գահը նրանից խլել է մյուս եղբայրը՝ ***Կոնստանդին Բ***: 1299–ին խաչակիր ասպետների օգնությամբ գահին վերահաստատված Հեթում Բ–ն ձերբակալել և երկրից արտաքսել է թե՛ Ս–ին, թե՛ Կոնստանդին Բ–ին:

ՍՄԲԱՏ Ա. (ծ. թ. անհտ–914), Հայոց թագավոր՝ 890–ից՝ Բագրատունիների արքայատնից: Հաջորդել է հորը՝ ***Աշոտ Ա***–ին: 885–ից՝ իշխանաց իշխան: 892–ին՝ Արաբ. խալիֆությունը, 893–ին Բյուզ. կայսրությունը ճանաչել են նրա թագավորությունը: Ս. Ա 893–ին Բյուզանդիայի Լևոն VI կայսրի հետ կնքել է առևտր. շահավետ համաձայնագիր: Նրա օրոք Բագրատունյաց թագավորությունն ընդգրկել է Հայաստանի մեծագույն մասը: Ս. Ա արաբ ամիրաներից ազատագրել է Դվինը, հնազանդեցրել Հայոց թագավորության արաբ. մյուս ամիրայությունները, ստիպել նրանց հարկ վճարել և զորք տրամադրել: Արքայանիստը Բագարանից տեղափոխել է Շիրակավան: Սակայն երկրում ծագած ավատատիր. երկպառակությունների պատճառով Ս. Ա չի կարողացել հակահարված տալ 909–ին Հայաստան ներխուժած Յուսուֆին: Երկիրն ավերածություններից փրկելու համար ստիպված հանձնվել է Ս. Ա. Յուսուֆին: Նրան գլխատել են:

ՍՄԲԱՏ Ա. Սահակյան (ծ. թ. անհտ–998), Սյունիքի թագավոր՝ 987–ից: Որպես գահակալ իշխան՝ 963–ից տիրել է Տղուկ, Բաղք և մինչև Հագարու (Աղավնո) գետն ընկած գվո–ները: 976/980–ին իր ձեռքն է վերցրել ***Սյունիների*** գահերեցությունը, աստիճանաբար իշխանությունը տարածել գրեթե ողջ Սյունիքի վրա: 987–ին Ս. Ա Սյունիքը (բացառությամբ Սևանա լճի ավազանի և Երնջակ գվո–ի) հռչակել է թագավորություն (տես ***Սյունիքի թագավորություն***): Ս. Ա 989–ին ճանաչել է Հայոց թագավոր ***Սմբատ Բ*** Բագրատունու գերագահ իրավունքը Սյունիքի նկատմամբ: 991–992–ին Հայոց թագավոր Գագիկ Ա Բագրատունին Սյունիքի թագավորությունից անջատել է Վայոց ձոր, Շահուկ գվո–ները և Ծղուկի հս. հատվածը, փոխարենը Ս. Ա–ին է տրվել Գողթնի ամիրությունից հետո նվաճված Երնջակ գվո–ը:

ՍՄԲԱՏ Բ Աշոտյան (ծ. թ. անհտ–1044), Սյունիքի թագավոր՝ 1040–ից: Ծղուկի տեր Ավագ Աշոտյանների տոհմից, Աշոտ իշխանի որդին, մոր գծով՝ Սյունիքի թագավոր ***Վասակ Ա***–ի թոռը: 1040–ին Ս. Բ 2–հզ–անոց զորաջոկատով մասնակցել է Կյուրիկյան թագավորություն ներխուժած Դվինի Շադդադյան ամիրա Աբուլ Ասվարի զորքերի ջախջախմանը: Օգտվելով Բագրատունյաց կենտր. թագավորության ծանր կացությունից՝ Ատրպատականի, Արդաբիլի, Ահարի, Թալիշի մահմեդ. ամիրությունների զորքերը 1044–ին ներխուժել են Ս. Բ–ի տիրույթները, ավերել Տաթևի վանքը: Հետ մղելով թշնամուն՝ Ս. Բ գրաղվել է վանքի և ավերված գվո–ների վերաշինությամբ:

ՍՄԲԱՏ Բ Տիեզերակալ (ծ. թ. անհտ–990), Հայոց թագավոր՝ 977–ից՝ ***Բագրատունիների*** արքայատոհմից: 958–ին եղել է հոր՝ ***Աշոտ Գ*** Ողորմածի գահակիցը: 950–977–ին՝ «Տաշիր երկրի» փոխարքա (966–ից կրտսեր եղբոր՝ ***Գուրգենի*** հետ): Անիի շուրջը կառուցել է նոր պարիսպներ, որոնք այժմ էլ կանգուն են և կոչվում են «Սմբատյան» կամ «Սմբատաշեն»: Կաթողիկոսարանն Արգինայից տեղափոխել է Անի և հիմք դրել նոր Մայր տաճարի կառուցմանը (ավարտվել է 1001–ին՝ ***Գագիկ Ա***–ի օրոք): Ս. Բ–ի գերագահությունը ճանաչել են Հայաստանի բոլոր ավատ. թագավորները: Ս. Բ–ի գահակալումը նշանավորվել է Անիի Բագրատունիների հետագա հզորացմամբ և կենտր. իշխանության ուժեղացմամբ:

ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ Այրաքաջ, մ. թ. ա. II դ–ի Հայոց սպարապետ և թագադիր իշխան: Բարձր Հայքի Սպեր գվո–ի տեր Բյուրատ Բագրատունու որդին: Ս. Բ. Հայոց Սանատրուկ թագավորի մանկահասակ որդի Արտաշեսին (նրան նույնացնում են ***Արտաշես Ա***–ի հետ) փախցրել է Պարսկաստան՝ նրան փրկելով գահին ապօրինաբար զավթած Երվանդի (նույնացնում են ***Երվանդ Դ*** Վերջինի հետ) դատաստանից: Պարսկաստանում մի շարք քաջագործություններից հետո Ս. Բ. վերադարձել է հայրենիք, պարսկ. զորքերի և իրեն միացած հայ նախարարների ուժերով տապալել Երվանդին ու վերահաստատել Արտաշեսի իրավունքները: Խուսափելով Արտաշեսի գահաժառանգ որդի Արտավազդի թշնամանքից՝ Ս. Բ. հաստատվել է Կորճայք նահանգ–ի Տմորիք գվո–ում՝ գլխավորելով երկրի հվ. զորաթևը: Կյանքի մայրամուտին զորավարը կռվել է հռոմեացի զավթիչների դեմ և հաղթականորեն հասել մինչև Կեսարիա (Մաժաք):

ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, VI դ–ի վերջի ռազմ. գործիչ, իշխան: ***Մուշեղ Մամիկոնյանի*** զորաբանակում մասնակցել է Պարսից արքա Խոսրով II Ափարվեզի գահի հավակնորդ Վահրամ Ջուբինի դեմ ճակատամարտին: Բյուզ. կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև Հայաստանի վերաբաժանումից (591) հետո

Մավրիկիոս (Մորիկ) կայսրը Ս. Բ–ու հեծելագունդը (1000 մարտիկ) փորձել է ուղարկել Թրակիա, սակայն նա ապստամբել է: Կայսեր. ուժերը ճնշել են ապստամբությունը, Ս. Բ–ուն աքսորել Աֆրիկա:

ՍՄԲԱԴ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ (ծ. թ. անհտ–775), Հայոց իշխան՝ 770–ից: ***Աշոտ Բագրատունի*** Կուրացյալի որդին: Հայոց իշխան Սահակ Բագրատունու օրոք դարձել է (753) սպարապետ, իսկ նրա մահից (770) հետո՝ նաև Հայոց իշխան (պատրիկ): Մասնակցել է Պարտավի եկեղեց. ժողովին: Միացել է 774–ին Արաբ. խալիֆության դեմ ***Մուշեղ Մամիկոնյանի*** գլխավորած ապստամբ. շարժմանը: Զոհվել է Արձնիի ճակատամարտում:

ՍՄԲԱԴ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ Ասպետ, IV դ–ի ռազմ. գործիչ: Եղել է Հայոց սպարապետ ***Մուշեղ Մամիկոնյանի*** օգնականը և հեծելազորի սպարապետը: Պարսից բանակի դեմ հաղթական ճակատամարտից (տես ***Ջիրավի ճակատամարտ 371***) հետո հետապնդել է Մերուժան Արծրունուն, Կոգովիտ գվո–ի ճահճուտների մեջ ջախջախել նրա զորախմբի մնացորդները և մահապատժի ենթարկել ուրացյալ իշխանին:

ՍՄԲԱԴ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, Աբլաբաս (արաբ.՝ Աբուլ Աբաս – Աբասի հայր), **Խոստովանող** (ծ. թ. անհտ–859), Հայոց իշխան՝ 852–ից: ***Աշոտ Բագրատունի*** Մսակերի որդին: Հոր մահից (826) հետո դարձել է սպարապետ և ժառանգել Հայաստանի հս. գվո–ները: 830–ական թթ–ին իշխան Սահակ Սյունու հետ միացել է Հայաստանի արաբ ոստիկան Հաշիդի դեմ ապստամբությանը: Կավակերտի (Հրազդանի ափին) ճակատամարտում ապստամբները պարտություն են կրել: Ս. Բ. գործակցել է 852–ին Հայաստան ներխուժած արաբ զորավար Բուղայի հետ և ստացել գերեվարված եղբոր թափուր պաշտոնը: Սակայն շուտով Ս. Բ. դուրս է եկել նրա դեմ: Բուղան 855–ին ձերբակալել է Ս. Բ–ուն և տարել Սամառա, որտեղ վերջինս հրաժարվել է հավատափոխ լինել և նահատակվել է, որի համար ստացել է Խոստովանող մականունը:

ՍՄԲԱԴ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ Բազմահաղթ, Խոսրով Շում (ծ. թ. անհտ–617), Հայոց մարզպան՝ մոտ 592–600–ին: Աչքի է ընկել Պարսից արքա Խոսրով II Ափարվեզի մղած պատերազմներում, նշանակվել Վրկան աշխարհի մարզպան (600): Դվինում 608–ին ղեկավարել է քուշանների դեմ պատերազմը. մենամարտում սպանել է քուշանների թագավորին: 610–ից՝ Տիզբոնում: Մասնակցել է 615–ի Պարսից ժողովին:

ՍՄԲԱԴ ԲՅՈՒՐԱՏՅԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ (ծ. թ. անհտ–726), Հայոց իշխան՝ 693–ից: Նախ կողմնորոշվել է դեպի Արաբ. խալիֆությունը, 698–ին Պահկ դաշտում դիմադրել Հայաստան ներխուժած բյուզ. զորքերին: Սակայն արաբ կառավարիչ Մուհամմադ իբն Մրվանի 701–ի ավերիչ արշավանքից հետո ելել է արաբների դեմ: 703–ին Վարդանակերտի ճակատամարտում նրա 2–հզ–անոց զորքը փայլուն հաղթանակ է տարել, սակայն 705–ին պարտություն է կրել Դրաշպետի ճակատամարտում և հեռացել երկրից: 709–ին Հայաստանի արաբ կառավարչի կոչով վերադարձել է Հայաստան և վերստին դարձել Հայոց իշխան, սակայն այլևս երկրի քաղ. կյանքին նկատելի մասնակցություն չի ունեցել:

ՍՄԲԱԴ ԶԱՐԵՀԱՎԱՆՑԻ, *Թոնդրակյան շարժման* հիմնադիրը: Քարոզչությունն սկսել է 830–ական թթ–ին, Թոնդրակ ավանում հիմնադրել է համայնք, եղել է Տևրիկում, որը Պավլիկյան շարժման կենտրոններից էր, որտեղ, հավանաբար, հանդիպել է Սերգիոս Տյուքիկոսին: Ս. Զ–ու սոց. և փիլ. հայացքները դրվել են Թոնդրակյան շարժման գաղափարախոսության հիմքում: Ըստ ***Դրիգոր Նարեկացու***՝ Ս. Զ–ուն մահապատժի է ենթարկել Մանազկերտի արաբ ամիրա Աբուլ Վարդը (Աբուլ–Բարդ): Ուստի ենթադրվում է, որ Ս. Զ–ու պայքարն ուղղված է եղել նաև օտարերկրյա նվաճողների դեմ:

ՍՄԲԱԴ ՍՊԱՐԱՊԵՏ, Սմբատ Գունդստաբլ (1208–1276), զորավար, պետ. գործիչ, դիվանագետ, իրավագետ, պատմագիր՝ ***Հեթումյանների*** տոհմից: Կիլիկ. Հայաստանի սպարապետության գործակալությունը վարել է 1226–ից, մղել բազմաթիվ հաղթական մարտեր (1246–ին և 1259–ին՝ Իկոնիայի սուլթանության, 1276–ին՝ Եգիպտոսի սուլթանության դեմ, ևն): Ս. Ս. և Կոստանդին պայլը մոնղոլ զորավար Բաչու Նոյինի հետ կնքել են փոխշահավետ պայմանագիր: 1248–ին Կարակորումում մոնղ. մեծ խանի հետ բանակցել է Հեթում Ա–ի այցելության և հայ–մոնղ. դաշնագրի վավերացման պայմանների մասին: 1254–ին Հեթում Ա–ին ուղեկցել է Կարակորում, որտեղ Մանգու խանի հետ ստորագրել է նոր պայմանագիր (տես ***Հայ–մոնղոլական դաշինք 1254***): Զոհվել է Սարվանդիքարի ճակատամարտում:

Ս. Ս. 1265–ին կազմել է իր նշանավոր Դատաստանագիրքը՝ ***Սմբատ Սպարապետի դատաստանագիրք***: 1265–ին հին ֆրանս–ից հայ. է թարգմանել «Անտիոքի ասիզները»: Ս. Ս–ի «Տարեգիրք» պատմ. երկը Մեծ Հայքում, Կիլիկյան Հայաստանում և այլուր 951–1272–ի քաղ. դեպքերի համառոտ ժամանակագրությունն է (հրտ.՝ 1856–ին Մոսկվայում՝ «Պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպոլիս եւ Հայոց Մեծաց ըստ կարգի ժամանակաց» վերնագրով): Ս. Ս–ի անունով պահպանվել են նաև արձանագրություններ, նամակներ, չափածո և այլ գործեր:

«ՍՄԲԱԴ ՍՊԱՐԱՊԵՏԻ ԱՎԵՏԱՐԱՆ», «**Սմբատ Գունդստաբլի Ավետարան**», XIII դ–ի ձեռագիր մատյան (Մնդ., ձեռ. № 7644): Ընդօրինակվել և պատկերազարդվել է Կիլիկիայում 1260–ական թթ–ին (պատվիրատու՝ ***Սմբատ Սպարապետ***): Զարդարված է բարձրորակ ներկերով և ոսկու առատ օգտագործմամբ մանրանկարներով (խորաններ, անվանաթերթեր, ավետարանիչների պատկերներ, լուսանցազարդեր): Կիլիկիայի հայկ. թագավորության անկումից (1375) հետո ձեռագիրը տարվել է Ղրիմ, որտեղ բազմիցս ընդօրինակվել է, նորոգվել և ավելացվել են տերուն. մանրանկարներ (ծաղկող՝ ***Ավետիք***):

ՍՄԲԱԴ ՍՊԱՐԱՊԵՏԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ, հայ իրավունքի հուշարձան: Կազմել է Սմբատ Սպարապետը 1265–ին՝ Կիլիկիայի հայկ. պետության հաս. հարաբերությունները կարգավորելու համար: Կիլիկիայի պայմաններին համապատասխան փոփոխված, կրճատված և գրաբարից կիլիկյան աշխարհաբարի թարգմանված ***Մխիթար Գոշի Դատաստանագիրքն*** է: Առաջին անգամ հրատարակվել է 1918–ին (Ա. Ղլտճյանի աշխատասիրությամբ): Թարգմանվել է գերմ. (1905) և ռուս. (1958):

ՍՄԲԱԴ ՕՐԲԵԼՅԱՆ (ծ. թ. անհտ–1273), իշխան, քաղ. գործիչ: Սյունիքի ***Օրբելյանների*** տոհմից, պատմիչ ***Stեփանոս Օրբելյանի*** հորեղբայրը: Շուրջ 2 տասնամյակ գլխավորել է Սյունիքի Օրբելյանների իշխան. տունը: 2 անգամ մեկնել է մոնղոլների մայրաքաղաք Կարակորում, իր տիրույթներում ստացել ինջուի՝ մոնղ. խաներին անմիջականորեն հարկ վճարողի իրավունք, ազատվել Զաքարյանների և Վրաց թագավորների գերիշխանությունից:

ՍՄԲԱԴԱԲԵՐԴ, Յախացքարի բերդ, X–XI դդ–ի ամրոց ՀՀ Վայոց ձորի մարզում՝ Արտաբույն գ–ից արլ.: Ունի բարձր ու լայն (2–3 մ) բրգավոր պարիսպներ, պաշտպանված է Եղեգիս և Արտաբույն գետերի խոր ձորերով: 3 մուտքերից հս–ը և արլ–ը սրբատաշ բազալտից կառուցված թաղածածկ սրահներ են, տանիքներին՝ պահակատներ ու դիտանոցներ: Ամրոցը պատով բաժանվում է 2՝ հս. և հվ. մասերի, որտեղ պահպանվել են միջնաբերդի, բնակելի շենքերի, ջրավազանների ավերակները: Զուրը բերվել է ***Յաղաց քար*** վանքի մոտակա աղբյուրներից՝ կավե խողովակներով:

ՍՄԲԱՏՅԱՆ Արմեն Բագրատի (ծ. 1954), կոմպոզիտոր, մանկավարժ, պետ., հաս. գործիչ: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1987): «Երաժշտական Հայաստան» ամսագրի հիմնադիր–տնօրեն (1998): ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան ՌԴ–ում (2000–10): 1982–88–ին՝ ՀՀ հեռուստատեսության երաժշտ. հաղորդումների գլխ. խմբ., 1996–1998–ին՝ ՀՀ մշակույթի նախարար, 1997–ից՝ Արտ. երկրների հետ մշակութ. կապի ընկ–յան նախագահ: Հեղինակ է «Լիլիթ» բալետի (միջազգ. փառատոնի մրց., Մադրիդ), «Մագաղաթ» սիմֆոնիայի, Սիմֆ. պոեմի, դաշնամուր. կոնցերտի, խմբերգերի, ծրագր., կամեր. և սիմֆ. երկերի:

Հանրապետ. մրցույթի 1–ին մրց., ՀՀ «Սիվսես Խորենացի» մեդալ (2001):

ՍՄԲԱՏՅԱՆ Գագիկ Յոլակի (ծ. 1949), ջութակահար: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2015): ԵՊԿ պրոֆ. (1994): Ա. Սաթյանի, Ռ. Սարգսյանի, Վ. Բաբայանի, Հ. Մելիք–յանի, Ա. Յոլչյանի, Հ. Դելլալյանի և ուր. ջութակի երկերի առաջին կատարող:

Երիտասարդ կատարողների IV Այսրկովկաս. մրցույթի 1–ին մրց. (1972, Բաքու):

ՍՄԲԱՏՅԱՆ Գառնիկ (Գարրի) Սերգեյի (1929–2003), նկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (1983): Հեղինակ է մոնումենտալ–դեկորատիվ գործերի, դիմանկարների, բնանկարների («Արգիշտին որսի ժամանակ», 1975, Ստեփանավան, «Գյումրվա հարսանիք», 1977, Գյումրի, երկուսն էլ՝ խճանկար, «Ազատ Շերենց», 1983, «Աղջկա դիմանկար», 1986, «Պրոմեթևս», 1961, «Աշունը Աշտարակում», 1957, «Աղթամար», 1983, ևն):

ՍՄԲԱՏՅԱՆ Կարեն Վահանի (1932–2008), նկարիչ: Ստեղծել է գեղանկարչ. գործեր («Ինքնանկար», 1972, «Զարթնիր, լառ», 1982, «Աղբյուր Սերոս», 1985, «Արքայական նատյուրմորտ», 2002, «Աշնան արև», «Միջօրե», երկուսն էլ՝ 2005, ևն), ձևավորել գրքեր (Զ. Ռոդարիի «Ջելսոմինոն խաբեբաների աշխարհում», 1964, հայկ. ժող. հեքիաթ, 1970, Է. Իսաբեկյանի «Իգդիր», 1994, Հ. Խաչատրյանի «Արքա–

յապատում», 1996, ևն): ՀԼԿեմ մրց. (1968), ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2007):

ՍՄԲԱՏՅԱՆ Հենրիկ Համազասպի (1934–2015), ջութակահար: ՀՀ վաստ. արտիստ (1974): Պրոֆ. (1982):

Երիտասարդության և ուսանողների համաշխ. VI փառատոնի 3-րդ մրց. (1957, Մոսկվա), Ն. Պագանինիի անվ. միջազգ. մրցույթի (1963, Ջենովա, Իտալիա) դիպլոմ:

ՍՄԲԱՏՅԱՆ Սմբատ Սահակի (1895–1971), մեքենագետ, ՀՀ-ում գղտ. մեքենագիտության հիմնադիրներից: Տեխ. գիտ. դ-ր (1953), պրոֆ. (1954): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): Աշխ-ները վերաբերում են լեռն. և ջրովի երկրագործության մեքենայացման խնդիրներին:

ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱՐԴԱՐԱՆ, հիմնադրվել է 1872-ին Խարբերդում՝ Սմբատյան հոգեսեր ընկ-յան ջանքերով: 1877–78-ի ռուս-թուրք. պատերազմի ժամանակ ուժգնացած բռնաճնշումների պատճառով մի շարք վարժարաններ, այդ թվում՝ Ս. վ., փակվել են: Վերաբացվել է 1895-ին՝ որպես իգական ճեմարան: Գործել է մինչև 1915-ը:

ՍՄԲԱՏՅԱՆՑ Մեսրոպ Աբրահամի (Տեր-Կարապետյան–Սմբատյանց Գրիգոր, 1833–1911), բանասեր-պատմաբան, եկեղեց. գործիչ, արք. (1888-ից): 1866-ին՝ Տաթեի վանքի վանահայր, 1867-ին՝ Նախիջևանի թեմի փոխանորդ: Ս. Հայաստանի տարբեր վայրերից հավաքել է ուրարտ. մի քանի տասնյակ արձանագրություններ («Բևեռաձև արձանագրութիւնք Արարատեան նահանգի, 1862–1910», ժող.): Հեղինակ է «Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ» (1895), «Նկարագիր սուրբ Ստեփաննոսի Վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից ուխտատեղաց եւս…» (1896), «Նկարագիր Շամախւոյ թեմի» (1897), «Նկարագիր սուրբ Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա» (1904) աշխ-ների:

ՍՄԲՈՒԿ, **բադրիջան**, մորմազգիների ընտանիքի միամյա և բազմամյա բույս: Բանջարաբույս է (պտուղը պարունակում է շաքար, սպիտակուցներ, դաբաղանյութեր, C, B_1, PP վիտամիններ): ՀՀ-ում մշակում են հիմնականում Արարատյան դաշտում և նախալեռն. գոտում: Բերքատվությունը՝ 30 *ց/հա* և ավելի:

ՍՄԵԼՋԵՐ (Smelzer) Նեյլ Ջոզեֆ (1930), ամերիկացի սոցիոլոգ, տնտ. սոցիոլոգիայի գիտակարգի հիմնադիրը: Մշակել է սոցիալ. փոփոխությունների բազմաստիճան մոդել՝ հիմնվելով XVIII–XIX դդ-ում Անգլիայում տեղի ունեցած արդ. հեղ-յան վրա:

ՍՄԵՏԱՆԱ (Smetana) Բեդրժիխ (1824–1884), չեխ կոմպոզիտոր, դիրիժոր, դաշնակահար: Չեխ. օպերայի («Բրանդերբուրգցիները Չեխիայում», 1863, «Վաճառված հարսնացուն», 1866, «Դալիբոր», 1867, ևն) հիմնադիրը: Հեղինակ է նաև սիմֆ. պոեմների («Իմ հայրենիքը», շարք, 1858–79, 6 ծրագր. սիմֆ. պոեմներ), լար. կվարտետների (1876, 1883), խմբերգերի, դաշնամուրի համար «Չեխական պարեր»-ի (2 տետր, 1877, 1879) ևն:

ՍՄԵՏԱՆԻՆԱ Ռաիսա Պետրովնա (ծ. 1952), ռուս դահուկորդուհի: ԽՍՀՄ ս. վ. վ. (1976): Ձմեռ. օլիմպ. խաղերի քառակի (1972՝ 2 ոսկե մեդալ, 1980, 1982), աշխարհի (1974, 1978, 1982, 1985, 1991) և ԽՍՀՄ (1974, 1976–77, 1983–86, 1989, 1991) բազմակի չեմպիոն՝ դահուկավազքի տարբեր ձևերում:

ՍՄԵՏՈՆԱ (Smetona) Անտանաս (1874–1944), լիտվացի պետ. գործիչ: 1917-ին՝ Լիտվայի խորհրդի նախագահ, 1919–20-ին՝ Լիտվայի 1-ին նախագահը: 1926-ին գլխավորել է պետ. հեղաշրջումը, դարձել նախագահ: 1940-ից՝ վտարանդի (Գերմանիա):

ՍՄԵՍ (Smuts) Յան Քրիստիան (1870–1950), Հարավաֆրիկյան Միության (1961-ից՝ ՀԱՀ) վարչապետ՝ 1919–24 և 1939–48-ին: Բրիտանիայի ֆլդմ. (1941-ից): Վարել է ապարտհեյդի քաղ-յուն: ***Ազգերի լիգայի*** կանոնադրության հեղինակներից և մանդատային համակարգի ստեղծման նախաձեռնողներից է: ***Հոլիզմի*** «ամրողջականության փիլիսոփայության» հիմնադիրներից:

«ՍՄԵՐՇ» (ռուս.՝ смерть шпионам հապավումը – «Մահ լրտեսներին»), խորհրդ. ռազմ., հակահետախուզ. մարմինների պաշտոն. անվանումը 1943–46-ին: ԽՍՀՄ ՌԾՆ-ի ժողկոմատում եղել է նմանօրինակ վարչություն:

ՍՄԵՐՉ, տես ***Պուպահողմ***:

ՍՄԻԹ (Smith) Ադամ (1723–1790), շոտլանդացի տնտեսագետ, դաս. քաղ-յան հիմնադիրներից: «Ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների մասին հետազոտության» (1776) մեջ ընդհանրացրել է տնտեսագիտ. մտքի այդ ուղղության զարգացումը, քննարկել արժեքի ու եկամուտների բաշխման տեսությունը, կապիտալն ու դրա կուտակումը, Արմ. Եվրոպայի տնտ. պատմությունը, տնտ. քաղ-յան հայացքները, պետության ֆինանսները:

ՍՄԻԹ Համիլտոն (ծ. 1931), ամերիկացի մանրէաբան: Մշակել է ռեստրիկտազի անջատման և մաքրման մեթոդներ, որոնք առանձնահատուկ ճեղքում են ԴՆԹ-ն՝ ըստ նուկլեոտիդների հաջորդականությունների, և այդ հաջորդականության որոշման մեթոդ: Նոբելյան մրց. (1978, Վ. ***Արբերի*** և Դ. ***Նաթանսի*** հետ):

ՍՄԻԹ Մայքլ (1932–2000), կանադացի կենսաքիմիկոս: Աշխ-ները վերաբերում են նպատակաուղղված մուտածնությանը և նրա օգտագործմանը՝ մոդիֆիկացված սպիտակուց ստանալու համար:

Նոբելյան մրց. (1963, Ք. ***Մուլիսի*** հետ):

ՍՄԻԹ Միշել (ծ. 1969), իռլանդացի լողորդուհի: Օլիմպ. խաղերի եռակի (1996), Եվրոպայի քառակի (1995, 1997) չեմպիոն՝ տարբեր մրցաձևերում:

ՍՄԻԹ Ջորջ (1840–1876), անգլիացի ասուրագետ-հնագետ: Հայտնաբերել է «Գիլգամեշ» դյուցազնավեպի, ջրհեղեղի մասին ասքի և այլ էպիկ. ստեղծագործությունների տեքստեր, ինչպես նաև պատմ. վավերագրեր ***Աշուրբանիպալ*** թագավորի գրադարանի սեպագրերից: Պեղումներ է կատարել Նինվեում:

ՍՄԻԹ Ջորջ Էլվուդ (ծ. 1930), ամերիկացի ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են կիրառ. ֆիզիկային: Հայտնագործել է [1969, Ուիլլարդ Բոյլի (1924–2011) հետ] լիցքային կապով սարքը (ԼԿՍ), որի տեխնոլոգիայի հիման վրա մշակվել է լուսազգայուն լուսադիոդներից կազմված ԼԿՍ-մատրիցա: Նոբելյան մրց. (2009, Ու. Բոյլի հետ):

ՍՄԻԹ Վեռնոն (ծ. 1927), ամերիկացի տնտեսագետ: Աշխ-ները վերաբերում են ներդրումների ու արտադրանքի փոխկապվածության, տնտեսագիտության փորձարկումների, հավասարակշռված գնի ձևավորման մոդելավորման, աճուրդների և ֆոնդային բորսաների աշխ-ի հարցերին: Նոբելյան մրց. (2002):

ՍՄԻԹ Ուիլյամ (1769–1839), անգլիացի ճարտարագետ, կենսաշերտագրության հիմնադիրներից: Ձրանցքների կառուցման ժամանակ հաստատել է, որ նստվածք. լեռն. ապարների հասակը կարելի է համադրել ըստ նրանցում պարունակող բրածո օրգանիզմների մնացորդների: Կազմել է Անգլիայի 1-ին (1813–15) երկրբ. քարտեզը՝ ըստ լեռն. ապարների հասակի:

ՍՄԻԹԻ ԴՈԳՄԱ, Ա. ***Սմիթի*** ձևակերպած դաս. քաղտնտ-յան հիմնարար թեզիսներից, որի համաձայն՝ հաս-յան տարեկան արդյունքի գինը (փոխանակ. արժեքը) հաշվարկվում է որպես հաս-յան բոլոր անդամների եկամուտների գումար:

ՍՄԻԹԻՍ (Smithies) Օլիվեր (1925–2017), անգլիացի կենսաֆիզիկոս: 1950-ական թթ-ից՝ ԱՄՆ-ում: Առաջարկել է գել-էլեկտրոֆորեզի մեթոդը՝ կենսբ. մակրոմոլ-ների բաժանման համար: Աշակել է մուտացվող գենի շտկման մեթոդ (բջջի մակարդակով)՝ հոմոլոգ ռեկոմբինացման մեխանիզմի օգտագործմամբ:

Նոբելյան մրց. [2007, Մ. ***Կապեկկիի*** և Մարտին Էվանսի (ծ. 1941) հետ]:

ՍՄԻԹՍՈՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ, ԱՄՆ-ի հնագույն պետ. ԳՀ և մշակութ. հաստատություններից: Հիմնադրվել է Վաշինգտոնում 1846-ին՝ անգլիացի գիտնական Ջ. Սմիթսոնի (1765–1829) նյութ. միջոցներով: Ունի աստղաֆիզ. աստղադիտարան (1890), Ազգ. կենդբ. պարկ, պատկերասրահ ևն:

ՍՄԻԹՍՈՆՆԵՐ (Smithson), անգլիացի ճարտ. ամուսիններ: **Պիտեր Ս.** (1923–2003) և **Ալիսոն Ս.** (1928–1993), բրուտալիզմի հիմնադիրները ճարտ-յան մեջ: Կառույցներում հրաժարվել են շինանյութերի (բետոն, պողպատ, աղյուս) բնական ֆակտուրան ծածկող դեկորատիվ հնարքներից (դպրոց՝ Հանստենտոնում, 1945–54, «Տնտեսագետ» հանդեսի խմբագրության շենքը՝ Լոնդոնում, 1964):

ՍՄԻԼԱՔՍ, սմիլասազգիների ընտանիքի խոտաբույսերի և թփերի ցեղ: Հայտնի է 200 (մինչև 350) տեսակ՝ հիմնականում Միջերկրածովայքում, Ասիայի և Հս. Ամերիկայի արևադարձ. և մերձարևադարձ. շրջաններում: Դեղազարդիչ է:

ՍՄԻԼԳԻՍ (Smilgis) Էդուարդ (1886–1966), լատիշ ռեժ., դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1948): Ռիգայի Յ. Ռայնիսի անվ. գեղ. թատրոնի հիմնադիրներից (1920, մինչև 1964-ը՝ գեղ. ղեկ.): Բեմադրել է Ռայնիսի «Կրակ և գիշեր» (1947), Մ. Գորկու «Եգոր Բուլըչովը և ուրիշներ» (1946), Վ. Շեքսպիրի «Համլետ» (1959) և այլ գործեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1947):

ՍՄԻՌՆԵՆՍԿԻ Խրիստո (Իզմիռլիև Դիմիտրով Խրիստո, 1898–1923), բուլղար բանաստեղծ: Հեղինակ է «Թող լույս լինի» (1922) ժող-ի, «Ձմեռային երեկոներ» (1923) և այլ պոեմների, նաև քաղ. երգիծ. գործերի, ակնարկների: Ս-ու մի շարք երկեր թարգմանվել են և տպագրվել հայկ. մամուլում:

ՍՄԻՌՆԻՈՊՍԻՍ, նեխուրազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Դեղաբույս է: Հայտնի է 4 տեսակ, ՀՀ-ում՝ 1՝ հայկ. Ս.: Հանդիպում է միայն Վարդենյաց լ-անցքում և Վայոց ձորի

մարզում: Բնաշխարհիկ է, գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՍՄԻՌՆՈՎ Ալեքսեյ Սեմյոնովիչ (1917–1987), ռուս օդաչու, գնդ. (1952): ԽՄ հերոս (1943, 1945): ՀՄՊ-ի ժամանակ կործանիչ ավիացիայում եղել է սավառնակախմբի հրամ., գնդի հրամ-ի տեղակալ: Մասնակցել է 72 օդ. մարտերի, խփել է 34 ինքնաթիռ:

ՍՄԻՌՆՈՎ Անդրեյ Սերգեևիչ (ծ. 1941), ռուս. կինոռեժ., դրամատուրգ: ՌԴ ժող. արտիստ (1999): Ս. Ս. ***Սմիռնովի*** (գրող) որդին: Նկարահանել է «Բելոռուսական կայարան» (1971), «Աշուն» (1975), «Հավատով և ճշմարտությամբ» (1980), «Կանայք» (2011) և այլ ֆիլմեր: Հեղինակ է սցենարների, նաև պիեսների («Իմ հարազատներ», Մոսկվայի սատիրայի թատրոնում, 1985), նկարահանվել է «Ձեռնով», «Նրա կնոջ օրագիրը», «Հայրեր և որդիներ», «Ծանր ավազ» (հեռուստասերիալ) և այլ ֆիլմերում:

ՍՄԻՌՆՈՎ Բորիս Ալեքսանդրովիչ (1908–1982), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1963): 1929-ից՝ Լենինգրադի կոմեդիայի թատրոնի, 1955-ից՝ ՄԳԱԹ-ի դերասան: Մարմնավորել է Վ. Ի. Լենինի կերպարը Ն. Ֆ. Պոգոդինի «Կրեմլյան կուրանտներ», «Երրորդը՝ պաթետիկականը» ներկայացումներում: Նկարահանվել է «Կոմունիստ», «Անձամբ ճանաչում եմ» (Հայֆիլմ), «Ապասիոնատ» և այլ կինոնկարներում: Լենինյան մրց. (1959):

ՍՄԻՌՆՈՎ Եֆիմ Իվանովիչ (1904–1989), բժշկ. ծառայության ռուս. գեն-գնդ. (1943): ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1948): Սոց. աշխ. հերոս (1978): Խորհրդ. բանակի գլխ. ռազմասան., այնուհետև՝ գլխ. ռազմաբժշկ. վարչության պետ (1939–47, 1955–60), ԽՍՀՄ ԱՆ նախարար (1947–53): Աշխ-ները վերաբերում են ռազմաբժշկ. ծառայության կազմակերպմանն ու ռազմավարությանը:

ՍՄԻՌՆՈՎ Իգոր Նիկոլաևիչ (ծ. 1941), չճանաչված Մերձդնեստրյան Մոլդ. Հանրապետության (ՄՄՀ) նախագահ՝ 1991–2011-ին: 1990–91-ին՝ Մերձդնեստրյան Մոլդ. ԽՍՀ ԳԽ նախագահ: 1992-ին՝ ՄՄՀ ՋՈւ գլխ. հրամ.:

ՍՄԻՌՆՈՎ Լեոնիդ Անդրեևիչ (ծ. 1934), ռուս. լեռն. ճարտարագետ: ՌԴԱ թղթ. անդամ (1991): Աշխ-ները վերաբերում են էկոլոգիայի տեխնոլոգիաների, երկաթահանքի համալիր մետաղագործ. վերամշակման հարցերին: ԽՍՀՄ Պետ. (1976, 1984), ՌԴ (1995) մրց-ներ:

ՍՄԻՌՆՈՎ Լեոնիդ Վասիլևիչ (1916–2001), ռուս. պետ. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1961, 1982): 1961-ից՝ ԽՍՀՄ ՆԽ պաշտպ. տեխնիկայի, Պետ. կոմիտեի նախագահի տեղակալ, նախագահ, ԽՍՀՄ նախարար, 1963–85-ին՝ ԽՍՀՄ ՆԽ նախագահի տեղակալ: Լենինյան մրց. (1960):

ՍՄԻՌՆՈՎ Նիկոլայ Իվանովիչ (1917–1992), ԽՍՀՄ ծովակալ (1973): ԽՄ հերոս (1984): ՀՄՊ-ի ժամանակ՝ սուզանավի, 1969–74-ին՝ Խաղաղօվկիանոս. նավատորմի հրամ.: 1974-ից՝ ՌԾՆ գլխ. հրամ-ի 1-ին տեղակալ:

ՍՄԻՌՆՈՎ Սերգեյ Սերգեևիչ (1895–1947), ռուս. երկրաբան: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1943): Մշակել է հիդրոթերմալ հանքայնացման զոնալության և մագմատիզմի հետ նրա կապի մասին ուսմունքը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946):

ՍՄԻՌՆՈՎ Սերգեյ Սերգեևիչ (1915–1976), ռուս. գրող: Ա. Ս. ***Սմիռնովի*** հայրը: 1959–60-ին՝ «Լիտերատուրնայա գազետա» (ռուս.) թերթի գլխ. խմբ.: Հեղինակ է «Բրեստի ամրոցը» (1957, լրց. հրտ.՝ 1964, հայ.՝ 1966) պատմ. ակնարկի, «Բրեստի ամրոցի հերոսները» (1959), «Պատմություններ անհայտ հերոսների մասին» (1963) վավերագր. ակնարկների ժող-ների, «Ամրոց Բուգ գետի ափին» (1955) և այլ պիեսների, «Իտալիայում» (1961), «Ուղևորություն Կուբա» (1962) և ակնարկների այլ ժող-ների: Լենինյան մրց. (1965):

ՍՄԻՌՆՈՎ Վալենտին Պանտելեյմոնովիչ (ծ. 1937), ռուս. փորձարար-ֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (2003): Ուսումնասիրել է պլիքները մագնիսացած պլազմայում, էլեկտրոնների գերհզգրիտ փնջերը, բազմալիցք իոնների պլազման, բարձր խտության էներգիայի ֆիզիկայի խնդիրները:

ԽՍՀՄ (1981), ՌԴ (1997) Պետ. մրց-ներ:

ՍՄԻՌՆՈՎ Վլադիմիր Իվանովիչ (1887–1974), ռուս. մաթեմատիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1943): Սոց. աշխ. հերոս (1967): Աշխ-ները վերաբերում են մաթ. ֆիզիկայի հավասարումներին, կոմպլեքս փոփոխականով ֆունկցիաների և առաձգականության տեսություններին: Հեղինակ է «Բարձրագույն մաթեմատիկայի դասընթաց»-ի (հ. 1–5, 1924–47): ԽՍՀՄ Պետ. մրց. (1948):

ՍՄԻՌՆՈՎ Վլադիմիր Իվանովիչ (1910–1988), ռուս. երկրաբան: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1962): Սոց. աշխ. հերոս (1980): Աշխ-ները վերաբերում են օգտ. հանածոների քանակ. գնահատման, ԽՍՀՄ մետաղ. հանքավայրերի առաջացման ու տեղաբաշխման օրինաչափությունների: Լենինյան (1972), ԽՍՀՄ Պետ. (1986) մրց-ներ:

ՍՄԻՌՆՈՎ Վլադիմիր Նիկոլայի (ծ. 1937), ռուս. կենսաքիմիկոս: ՌԳԱ (2013), ՌԲԳԱ (1984) ակադ.: Աշխ-ները վերաբերում են էուկարիոտների մոլ. կենսբ-յանը, սրտի կենսաքիմիային, աթերո- և թրոմբածնության բջջ. մոլ. մեխանիզմներին: ԽՍՀՄ Պետ. (1978), Լենինյան (1982) մրց-ներ:

ՍՄԻՌՆՈՎԱ Լիդիա Նիկոլաևնա (1915–2007), ռուս դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1974): Նկարահանվել է կինոյում («Իմ սերը», «Բալզամինովի ամուսնությունը», «Գյուղական դետեկտիվ», «Որդու վերադարձը», «Կառնավալ», «Ժառանգորդուհիները», հեռուստաֆիլմ, ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ՍՄԻՍԼՈՎ Վասիլի Վասիլևիչ (1921–2010), ռուս. շախմատիստ, շախմատի տեսաբան: Աշխարհի 7-րդ չեմպիոնը (1957–58), միջազգ. գրոսմայստեր (1950), ԽՍՀՄ ս. վ. վ. (1948), ԽՍՀՄ չեմպիոն (1949):

ՍՄՈԳ (անգլ.՝ smog, < smoke – ծուխ և fog – մառախուղ), ծխից, մշուշից և փոշուց կազմված աերոզոլ: Առաջանում է արդ. քաղաքների մթն-ում մրի, փոշու, վառելանյութի ջերմատարրալուծման մասնիկներից, խոնավ մթն-ում առկա են նաև հեղուկի կաթիլներ: Շոգ, չոր եղանակի ժամանակ նկատվում է դեղին շղարշի տեսքով: Կարող է շնչառ. օրգանների, արյան շրջանառության հիվանդությունների պատճառ դառնալ:

ՍՄՈԼԵՆՍԿ, ք. ՌԴ-ում, համանուն մարզի վարչ. կենտրոնը՝ Դնեպրի ափին: Երկաթգ. հանգույց է: Բն.՝ 315,6 հզ. (2009): Զարգացած են մեքենաշինությունը, շինանյութերի և արդ-յան այլ ճյուղեր: Կան բուհեր, 2 թատրոն, թանգարաններ, պատմ. և ճարտ-գեղ. թանգարան-արգելոց: Ս-ի պատմ. կենտրոնում է Սոբոռնայա Գորա ճարտ. համալիրը (գլխ. կառույցը Ուսպենսկի տաճարն է, 1677–79)՝ շրջապատված աշտարակավոր պարիսպով (1595–1602): Ճարտ. հուշարձաններից պահպանվել են XII դ-ի (վերակառուցված՝ XVIII դ-ում) եկեղեցիներ: 1404–1514-ին մտել է Լիտվ. մեծ իշխանության, ապա՝ Մոսկովյան պետության, 1611-ին՝ Ռեչ Պոսպոլիտայի կազմի մեջ: 1654-ին նվաճել են ռուս. զորքերը: 1812-ի Հայրենական պատերազմի ժամանակ տեղի է ունեցել Սմոլենսկի ճակատամարտը: ՀՄՊ-ի ժամանակ, Սմոլենսկի ճակատամարտում (1941) խորհրդ. զորքերը ձախողել են հակառակորդի՝ Մոսկվայի վրա հարձակման պլանները: Հերոս քաղաք է (1985):

ՍՄՈԼԵՆՍԿԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ, 1. **1812**, Հայրենական պատերազմի ժամանակ՝ օգոստ. 4–6(16–18)-ին: Ռուս. զորքերը (գլխ. հրամ.՝ գեն. Մ. Ռ. ***Բարկլայ դը Տոլի***), պաշտպանվելով ***Նապոլեոն I***-ի բանակների գերակշռող գլխ. ուժերից, դիմացել են հակառակորդի հարվածներին և կազմակերպված անցել Դնեպրը:

2. **1941**, ՀՄՊ-ի ժամանակ (հուլիս 10–սեպտ. 10): Խորհրդ. զորքերի Արմ., Պահեստային, Կենտր. և Բրյանսկի ռազմաճակատները (ԽՄ մարշալ Ս. Կ. Տիմոշենկո, բանակի գեն. Գ. Կ. Ժուկով, գեն-գնդ. Ֆ. Ի. Կուզնեցով, գեն-լեյտ. Ա. Ի. Երյոմենկո) մի քանի պաշտպ. և հարձակող. գործողություններով կանգնեցրել են գերմ. «Կենտրոնական» բանակախմբի (գեն-ֆլդմ. Ֆ. Բոկ) հարձակումը Մոսկվայի ուղղությամբ և խափանել թշնամու՝ դեպի Մոսկվա անկանգ առաջընթացի պլանը:

ՍՄՈԼԵՆՍԿԻ ՄԱՐԶ, ՌԴ Կենտր. դաշն. օկրուգում: Տարածքը՝ 49,8 հզ. *կմ*², բն.՝ 974,1 հզ. (2009): Ունի 25 շրջան, 15 քաղաք, 12 քտա: Վարչ. կենտրոնը՝ ***Սմոլենսկ***: Կազմավորվել է 1937-ին: Գլխ. գետը Դնեպրն է: Տնտ-յան առաջատար ճյուղը վերամշակող արտադր-յունն է և մեքենաշինությունը:

ՍՄՈԼԵՆՍԿԻ ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ, 1943-ի օգոստ. 7–հոկտ. 2-ին՝ ՀՄՊ-ի ժամանակ: Խորհրդ. Արմ. (բանակի գեն.՝ Վ. Դ. ***Սոկոլովսկի***) և Կալինինյան ձախ թևի (բանակի գեն.՝ Ա. Ի. ***Երյոմենկո***) ճակատների զորքերը ջախջախել են 7 դիվիզիա և ծանր պարտության մատնել գերմ. բանակների «Կենտրոն» խմբավորման (գեն-ֆլդմ. Գ. Կլյուգե) 14 դիվիզիա, կաշկանդել են գերմ. մոտ 55 դիվիզիա, որը նպաստել է ***Կուրսկի ճակատամարտում*** խորհրդ. զորքերի հաջող հակագրոհի ավարտին: Սկիզբ է դրվել Բելոռուսիայի ազատագրմանը:

ՍՄՈԼԻՉ Յուրի Կոռնևևիչ (1900–1976), ուկրաինացի գրող: Սոց. աշխ. հերոս (1970): Հեղինակ է գիտաֆանտաստիկ «Հիսաքանչ աղետներ» (1935) եռերգության, «Նրանք չեն անցել» (1946), «Խաղաղություն խրճիթներին, պատերազմ պալատներին» (1958), «Մոնչում և հառաչում է լայնահուն Դնեպրը» (1960) վեպերի, նաև պատմվածքների, պիեսների, հրապարակախոս. գործերի:

ՍՄՈԼԼ (Small) Ալբիոն Վուդբերի (1854–1926), ամերիկացի սոցիոլոգ, սոցիալ. դարվինիզմի ներկայացուցիչ: «Ամերիկյան սոցիոլոգիական ամսագրի» հիմնադիրը (1895), աշխարհում առաջին սոցիոլոգ. ֆակ-ի ղեկ-ը (1892-ից, Չիկագոյի համալսարան, ԱՄՆ):

ՍՄՈԼԼԻ, **Սմելլի** (Smalley), Ռիչարդ (1943–2005), ամերիկացի քիմիկոս: Բացահայտել է (1985) ածխածնի նոր ձևափոխության՝ ֆուլերենների գոյությունը: Նոբելյան մրց. (1996, Ռ. *Քյոռլի* և Հ. Քրոթոյի հետ):

ՍՄՈԼՆԻ, պատմաճարտ. հուշարձան Ս. Պետերբուրգում (կառուցվել է 1806–08-ին, ճարտ.՝ Ջ. Կվարենգի): 1991-ից՝ Ս. Պետերբուրգի քաղաքապետարանն է: Ս-ի մոտակայքում բարոկկոյի ոճով կառուցված մենաստանն է (XVIII դ., ճարտ.՝ Բ. Ֆ. Ռաստրելլի, վերաշինվել է XIX դ-ում, ճարտ.՝ Վ. Պ. Ստասով), որը Ս-ի հետ Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՍՄՈԼՆԻԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ ազնվազարմ աղջիկների, առաջին փակ տիպի իգական արտոնյալ միջնակարգ հանրակրթ. ուսումնադաստիարակչ. հաստատությունը Ռուսաստանում (6–18 տարեկան ազնվազարմ աղջիկների համար): Հիմնադրվել է Ի. Ի. Բեցկովի նախաձեռնությամբ 1764-ին Ս. Պետերբուրգի Վոսկրեսենսկի Սմոլնի կուսանոցին կից՝ Ազնվազարմ օրիորդաց դաստիարակչ. ընկ. անվանումով: Փակվել է 1917-ին:

ՍՄՈԼՈՒԽՈՎՍԿԻ (Smoluchowski, ֆոն Սմոլան–Սմոլուխովսկի) Մարիան (1872–1917), լեհ ֆիզիկոս-տեսաբան: Ուսումնասիրությունները վերաբերում են ֆլուկտուացիաների մոլեկուլակինետիկ տեսությանը (1904) և բրոունյան շարժմանը (1906): Աշխ-ներ ունի նաև կոլոիդ համակարգերի կինետիկայի (Էյնշտեյն–Սմոլուխովսկու հավասարում), կրիտիկ. օպալեսցենցիայի վերաբերյալ:

ՍՄՈԿՏՈՒՆՈՎՍԿԻ Ինոկենտի Միխայլովիչ (1925–1994), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1974): Սոց. աշխ. հերոս (1990): 1957-ից՝ Լենինգրադի Մեծ դրամատիկ (իշխան Միշկին՝ «Ապուշը»՝ ըստ Ֆ. Մ. Դոստոևսկու, ևն), 1971-ից՝ Մոսկվայի Փոքր (արքա Ֆեոդոր՝ Ա. Կ. Տոլստոյի «Ֆեոդոր Իոհանովիչ արքան», ևն) թատրոնների, 1976-ից՝ ՄԳԱԹ-ի (Իվանով՝ Ա. Պ. Չեխովի «Իվանով», ևն) դերասան: Նկարահանվել է «Տարվա ինն օրը», «Համլետ», «Զգուշացիր ավտոմեքենայից», «Քեռի Վանյա», «Իմ սիրտը լեռներում է» (Հայֆիլմ) և այլ կինոնկարներում: Արվ-ին բնորոշ են գեղ. մասշտաբ. ընդհանրացումը, մեկնաբանման ինքնատիպությունն ու խորությունը, դերի հոգեբ. բարդ ուրվապատկերը:

Լենինյան (1965), Վասիլի եղբայրների անվ. ՌԽՖՍՀ Պետ. (1971) մրց-ներ:

ՍՄՈՐՈԴԻՆՑԵՎ Անատոլի Ալեքսանդրովիչ (1901–1986), ռուս վիրուսաբան և իմունաբան: ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1966): Աշխ-ները վերաբերում են գրիպի, ուղեղաբորբերի և այլ վիրուս. վարակիչ հիվանդությունների պատճառագիտությանն ու կանխարգելմանը: Մ. Պ. Չումակովի հետ մշակել և ներդրել է պոլիոմիելիտի դեմ պատվաստանյութ: ԽՍՀՄ Պետ. (1941), Լենինյան (1963) մրց-ներ:

ՍՄՈՒԹ (Smoot) Ջորջ (ծ. 1945), ամերիկացի աստղաֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են տիեզերածնությանը և տարր. մասնիկների ֆիզիկային: Ցույց է տվել (Ջ. *Մազերի* հետ), որ մնացորդ. ճառագայթման սպեկտրը համապատասխանում է բացարձակ սև մարմնի սպեկտրին: Նոբելյան մրց. (2006, Ջ. *Մազերի* հետ):

ՍՄՈՒՉԿԵՎԻՉ Յակով Վլադիմիրովիչ (1902–1941), ռուս. ռազմ. գործիչ, ավիացիայի գեն-լեյտ. (1940): ԽՄ հերոս (1937, 1939): Մասնակցել է Իսպանիայի քաղաքաց. պատերազմին (1936–39). Խալխին Գոլի մարտերին (1939) եղել է ավիախմբի հրամ.: 1939–40-ին՝ ՌՕՈՒ պետ: Անհիմն բռնադատվել է, գնդակահարվել է, հետագայում՝ արդարացվել:

ՍՄՈՒԼ (Smuul) Յուհան (1922–1971), էստոնացի գրող: Էստ. ԽՍՀ ժող. գրող (1965): 1953–71-ին՝ Էստոնիայի ԳՄ նախագահ: Հեղինակ է «Բանաստեղծություններ» (ռուս., 1951) ժող-ի, «Սառցագիրք» (1958) քնարահրապարակախոս. ուղեգր. օրագրի, «Լևա» (1959), «Գնդապետի այրին» (1965), «Պինգվինների կյանքը» (1969) գրոտեսկաերգիծ. պիեսների, «Մենախոսություններ» (1968) երգիծ. արձակ երկի: ԽՍՀՄ Պետ. (1952), Լենինյան (1961) մրց-ներ:

ՍՅԱՄԻՆ (Ամոյ), ք. Չինաստանի Ֆուցզյան պրովինցիայում: Բն.՝ 637 հզ. (ագլոմերացիայում՝ 835 հզ., 2010): Տրանսպորտ. հանգույց է: Նվինգստ՝ Թայվանի նեղուցի Սյամինգան խորշում: Ունի օդանավակայան: Հեռուստահաղորդակցման արդ-յան խոշոր կենտրոն է (այդ թվում՝ բջջ. հեռախոսների արտադր-յուն): Զարգացած են առողջապ. սարքավորումների, դեղագործ., քիմ. բարձր տեխնոլոգիայի արտադր-յունները, ձկան վերամշակումը:

ՍՅԱՆԳԱՆ (անգլ.՝ Հոնկոնգ, Hongkong), ք. Չինաստանի հվ-արլ-ում՝ Հվ-չին. ծովի ափին: Փաստացի կազմված է Սյանգան հատուկ վարչ. շրջանի պաշտոն. կարգավիճակ չունեցող քաղաքներից և քտաներից: Զբաղեցնում է Ցզյուլուն թ-կղզու և 260-ից ավելի կղզիների տարածքը (1,1 *կմ*^{2}): Խոշորագույն կղզիներն են Դահառդաոն և Սյանգանդաոն (Հոնկոնգի հս. մասում տեղակայված են գործարար. շրջանները և պատմ. կենտրոնը), որոնք մայրցամաքի և հարակից այլ կղզիների հետ միացած են տրանսպորտ. թունելներով (այդ թվում՝ մետրոյով), կամուրջներով և լաստանավերով: Բն.՝ 7,3 մլն (2010, Շենչժեն ք-ի և արվարձանների հետ Գուանդուն պրովինցիայում կազմում են ագլոմերացիա, բն.՝ մոտ 9,4 մլն): Աշխարհում խոշորագույն նավահանգստ. համալիրներից է, Չինաստանի առավել հարուստ քաղաքներից: Ունի օդանավակայան: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 42,7 հզ. ԱՄՆ դոլար է: Առևտրաֆին. կարևորագույն միջազգ. կենտրոն է. Ս-ով է ուղղորդվում Չինաստանի ներդրումների և այլ պաշարների հոսքը: Կա ֆոնդ. բորսա (աշխարհում՝ խոշորագույններից) ևն: 1842–1997-ին Մեծ Բրիտանիայի տիրույթ էր, 1941–45-ին զավթել էր Ճապոնիան:

ՍՅԱՆՏԱՆ, ք. Կենտր. Չինաստանի Հունան պրովինցիայում՝ Սյանցզյան գետի ափին: Բն.՝ 669 հզ. (2010): Զարգացած են մետաղագործությունը, քիմ., տեքստիլ, սննդի արդ-յան ճյուղերը: Ս-ի շրջագծում է Սյո Ցզեղունի ծննդավայր Շաոշան գ.:

ՍՅԱՆՑՋՅԱՆ, գետ Չինաստանի հվ-արլ-ում: Երկ.՝ 801 *կմ*, ավազանը՝ մոտ 95 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 2270 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է մինչև Սյանտան ք.: Ափին է Չանշա ք.:

ՍՅՈԳՈՒՆ, կառավարիչների տիտղոս Ճապոնիայում՝ 1192–1867-ին: Նրանց օրոք կայսեր. հարստությունը զրկվել է իրական իշխանությունից: Եղել է Ս-ի 3 հարստություն՝ Մինամոտո (1192–1333), Ասիկագա (1338–1573), Տոկուգավա (1603–1867):

ՍՅՈԼՈՋԻ ԲԱՐԲԱՌ, հայ-ի «կը» ճյուղի բարբառ: Խոսվել է Նիկոմեդիայի հվ-արլ. Սյոլոզ բնակավայրում: Ունի երկաստիճան ձայնեղազուրկ (պ–փ) բաղաձայն. համակարգ:

ՍՅՈՄԳԱ, **ազնիվ սաղմոն**, սաղմոնաձկների ընտանիքի գաղթող ձուկ: Երկ.՝ մինչև 150 *սմ*, կ. զ.՝ 39 *կգ*: Ապրում է Ատլանտ. օվկ-ի հս. մասում և Հս. սառուցյալ օվկ-ի արմ. մասում: Արդյունագործ. և բազմացման արժեքավոր ձուկ է, թվաքանակը կրճատվում է:

ՍՅՈՄՈՒՇԿԻՆ Տիխոն Զախարովիչ (1900–1970), ռուս գրող: Հեղինակ է «Ալիտետը հեռանում է լեռները» (գիրք 1–2, 1947–48, հայ.՝ 1951) վեպի, որտեղ նկարագրել է չուկչի ժողդ-ի ճակատագիրը Հոկտ. հեղյունից հետո: Հայ. հրատարակվել է նաև «Այվամի արկածները» (1961) վիպակը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1949):

ՍՅՈՌԼՍ (Searles Lake), աղի լիճ ԱՄՆ Կալիֆոռնիա նահագ-ում: Ջուրը պարունակում է աղերի արդ. պաշարներ: Շահագործվում է 1914-ից: K_2O-ի ընդհ. պաշարները՝ 55 մլն *տ*:

ՍՅՈՐԱ (Seurat) Ժորժ (1859–1891), ֆրանսիացի նկարիչ: Նեոիմպրեսիոնիզմի հիմնադիրը, գեղանկարչության մեջ պուանտիլիստ. տեխնիկայի ստեղծողներից: Խճանկար. քսվածքներով ժանր. բնանկար. կոմպոզիցիաներում համադրել է ձևերի ընդհանրացվածությունն ու ճշգրիտ դիտողականությունը («Կրկես», 1890–91):

ՍՅՈՒ (Sue) Էժեն (Մարի Ժոզեֆ, 1804–1854), ֆրանսիացի գրող: Հեղինակ է «Փարիզի գաղտնիքները» (հ. 1–10, 1842–43, հայ.՝ «Գաղտնիք Փարիզի», հ. 1–8, 1868–70), «Թափառական հրեան» (հ. 1–10, 1844–45, հայ.՝ 1–2, 1853–54) արկածամելոդրամատիկ. վեպ-ֆելիետոնների, «Ժողովրդի գաղտնիքները» (1849–57) բազմահատոր վեպի: Հայ. հրատարակվել են նաև «Մահթիլդ» (հ. 1–4, 1870–71), «Դիւաբնակ բլուր» (հ. 1–2, 1879), «Յոթ մահացու մեղքեր» (հ. 1–2, 1883) վեպերը:

ՍՅՈՒԱՆՀՈՒԱ, ք. Չինաստանի Հերեյ պրովինցիայում: Բն.՝ 274 հզ. (2014): Սև մետաղաձուլության կենտրոն է:

ՍՅՈՒԱՆ–ՍՅՈՒՀԵ (չին.՝ ուսմունք սրբազանի, խորհրդավորի մասին), փիլ. ուսմունք Չինաստանում III–IV դդ-ում, արմ. գրկ-յան մեջ հաճախ կոչվել է նորդաոսականություն: Ս-ս. *դաոսիզմի* և *կոնֆուցիականության* յուրահատուկ համադրություն է, որն ազդեցություն է կրել «անունների դպրոցից» (մին ցզյա) և բուդդայականության մետաֆիզիկայից: Հայտնի ներկայացուցիչներից էին Հե Յանը, Վան Բին, Սյան Սուն և Հո Սյանը:

ՍՅՈՒԴԱԴ ԲՈԼԻՎԱՐ (Ciudad Bolivar), ք-գետ. նվինգստ (մատչելի է նաև ծով. նավերի համար) Վենեսուելայի հս-արլ-ում՝ Օրինոկո գետի ափին, համանուն նահագ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 381 հզ. (2010): Հիմնադրվել է 1764-ին՝ Անգոստուրա անունով: Կան գաղութ. շրջանի ճարտ. հուշարձաններ:

ՍՅՈՒԴԱԴ ԽՈՒԱՐԵՍ (Ciudad Juárez), ք. Մեքսիկայի Չիուաուա նահագ-ում՝ ԱՄՆ սահմանի մոտ՝ Ռիո Բրավո դել Նորտի գետի ափին՝ Էլ Փասո (ԱՄՆ) ք-ի դիմաց, որի հետ կապված է կամրջով: Բն.՝ 1,5 մլն (2010): Զարգացած է զբոսաշրջությունը: Հիմնադրվել է 1659-ին՝ Էլ Պասո դել Նորտե անունով:

ՍՅՈՒԴՈՎ, (Sydow) Մաքս ֆոն (Կառլ Ադոլֆ, ծ. 1929), շվեդ դերասան: Խաղացել է առավելապես Ի. *Բերգմանի* ներկայացումներում և ֆիլմերում («Յոթերորդ կնիքը», «Կուսական աղբյուր», «Դեմքը», «Ամոթ», «Հաղորդություն» ևն): Նկարահանվել է նաև «Քվիլլերի հուշագիրը», «Կոնդորի երեք օրը», «Անհնվածների կղզին», «Ռորին Հուդ» և այլ կինոնկարներում:

ՍՅՈՒԶԵՐԵՆ (ֆրանս.՝ suzerain – գերագույն), **գերապետ**, Արմ. Եվրոպայում միջին դարերում ավատատեր, տարածքի գերագույն սենյոր (թագավոր, դուքս, կոմս, իշխան), որն իր վասալների նկատմամբ ուներ գերիշխանություն:

ՍՅՈՒԺԵ (ֆրանս.՝ sujet – առարկա), 1. **գրականության** (էպոս, դրամա, վեպ, պատմվածք, պոեմ, սցենար ևն) մեջ գործողությունների, զարգացող դեպքերի ընթացքը, մարդկային կապերի և հարաբերությունների ամբողջությունը: Ս–ի զարգացման հիմքը *կոնֆլիկտն* է՝ հերոսների բախման միջոցով հաս. հակադիր ուժերի պայքարի բացահայտումը: Ս. շատ ընդհանուր գծեր ունի *ֆաբուլայի* հետ, երբեմն դրանք նույնացվում են: 2. **Կերպարվեստում** Ս. պատկերված որոշակի դեպքն է, իրավիճակը, որը հաճախ երևում է գործի վերնագրում:

ՍՅՈՒԻԶԺՈՒՄ, ք. Չինաստանի Ցզյանսու պրովինցիայում: Բն.՝ 1,33 մլն (2010): Տրանսպորտ. հանգույց է: Զարգացած են մետաղագործությունը, սննդի, բամբակե գործվածքների արդ–յունները, մեքենաշինությունը:

ՍՅՈՒԻՏ (ֆրանս.՝ suite – շարք, հաջորդականություն), գործիք. բազմամաս ցիկլ. երաժշտ. ստեղծագործություն: Ս–ի տարատեսակները, նաև պարտիտ, սերենադ, դիվերտիսմենտ անվանումներով գոյություն ունեն XVI դ–ից: XIX–XX դդ–ից ստեղծվում են նվագախմբային ոչ պարային, երբեմն՝ ծրագր. գործերից, հանդիպում են նաև օպեր., բալետ., կինոյի և թատրոնի երաժշտությունից կազմված Ս–ներ:

ՍՅՈՒԼԱՀՅԱՆ Լյուսի Հակոբջանի (ծ. 1940), գրող: Հեղինակ է «Թափառող հոգիներ» (1970), «Անավարտ սիրանվագ» (1984) և պատմվածքների այլ ժող–ների:

ՍՅՈՒԼԼԻ–ՊՐՅՈՒԴՈՄ (Sully–Prudhomme, Ռենե Ֆրանսուա Արման Պրյուդոմ, 1839–1907), ֆրանսիացի բանաստեղծ: Ֆրանսիայի ակադ–ի անդամ (1881): Հեղինակ է «Ստանսներ և ոտանավորներ» (1865), «Ջուր քնքշություն» (1875) ժող–ների, «Արդարացիություն» (1878), «Երջանկություն» (1888, ընդօրինակել է Լուկրեցիոսին) ծավալուն պոեմների, «Բանաստեղծական կտակ» (1901), «Ազատ ընտրության հոգեբանությունը» (1906) աշխ–ների: Ս–Պ–ի ստեղծագործությունները հայ. են թարգմանվել 1879–ից (Ա. Ղազիկյան, Ա. Փանոսյան, Ա. Ծատուրյան, Ե. Դուրյան և ուր.): Նոբելյան մրց. (1901):

ՍՅՈՒՅՋԺՈՒՄ, ք. Չինաստանում՝ Ցզյանսու պրովինցիայում: Բն.՝ 8,5 մլն (2010): Տրանսպորտ. խոշոր հանգույց է:

ՍՅՈՒՆԻ (Միրզայան) Գրիգոր Հովհաննեսի (1876–1939), կոմպոզիտոր, խմբավար: Նպաստել է հայկ. ռոմանսի ձևավորմանը, հավաքել ու ներդաշնակել է ժող. երգեր: 1895–ին Շուշիում հիմնադրել է երգչախումբ: Հեղինակ է «Ասլի և Քյարամ» երգախառն դրամայի, «Արեգնազան» օպերա–հեքիաթի, պոլիֆոնիկ երկերի, մեներգերի (Հ. Թումանյանի «Ինձ մի խնդրիր», Ա. Իսահակյանի «Ախ, ալ վարդի» ևն), խմբերգերի («Սարերի հովին մեռնիմ», «Ալագյազ» ևն):

ՍՅՈՒՆԻ Ռոնալդ Գրիգոր (ծ. 1940), պատմաբան, հրապարակախոս: Միչիգանի համալսարանի (ԱՄՆ) հասարակագիտյան և քաղ. պատմության պրոֆ. (1981): Գրիգոր *Սյունու* (Միրզայան) թոռը: Աշխ–ները (անգլ.) վերաբերում են Այսրկովկասի, XX դ–ի Ռուսաստանի (հատկապես՝ 1917–ի հեղ–յուններին ու դրանց հետևանքներին), Խորհրդ. Միության, ստալինականության սոց. պատմությանը, ինչպես նաև Հայկ. հարցին և Հայոց ցեղասպանությանը:

ՍՅՈՒՆԻ ՎԱՆՔ, Սիսավանի վանք, Սիսիանի Սուրբ Գրիգոր եկեղեցի, ճարտ. համալիր ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան ք–ում: Վանքի Սր Գրիգոր եկեղեցին (հետագայում՝ Սր Հովհաննես) հիմնադրել է Սյունյաց Վարազդուխտ իշխանուհին: Վերակառուցել են (VII դ.) Կոհազատ իշխանն ու Սյունյաց եպս. Հովսեփ Ա–ն: Եկեղեցին «հռիփսիմեատիպ» է՝ քառախորան, 4 անկյուններում՝ ավանդատներով, գմբեթի 12–նիստանի թմբուկը զարդարված է կամարաշարով, ներսում՝ պատկերաքանդակներ, ևն: Վանքը վերանորոգվել է 1959–61–ին:

ՍՅՈՒՆԵՆԵՐ, **Սիսակյաններ**, նախարար. տոհմ Հայաստանում: Սերել են *Սիսակից*: Մեծ Հայքի թագավորության վարչ. բաժանումից հետո Ս. ձեռք են բերել *Սյունիքի* «աշխարհակալի» պաշտոնը, որը դարձել է նրանց տոհմ. իրավունքը, իսկ Սյունիքը՝ ժառանգ. տիրույթը: Հայոց թագավոր *Վաղարշակը* Ս–ին նշանակել է Մեծ Հայքի արլ. սահմանագլխի կուսակալ և արքունի զորքերի հրամ.: Ս–ի իշխանանիստ կենտրոնը եղել է Ծղուկ գվթ–ի Շաղատ, 820–ական թթ–ից՝ Վայոց ձորի Եղեգիս գք–ն, 970–ական թթ–ից՝ *Կապանը*:

430–440–ական թթ–ին Վասակ Սյունին նշանակվել է նախ Վրաց, ապա՝ Հայոց մարզպան: Վերջինիս նախաձեռնությամբ 571–ին Սյունիքը հանվել է մարզպան. Հայաստանից և մտցվել Ատրպատականի մեջ՝ վարչականորեն ենթարկվելով *Փայտակարանին*:

Ս. օժանդակել են Բագրատունյաց թագավորության հիմնադիր Աշոտ Ա–ին Հայոց թագավոր հռչակելու, ճանաչել են նրա գերագույն իրավունքը նաև Սյունիքի նկատմամբ: 909–910–ին՝ Ատրպատականի ամիրա Յուսուֆի արշավանքի ժամանակ, կորցրել են Երնջակ գվթ–ը, որը հաջողվել է վերադարձնել Գագիկ Ա Բագրատունու (989–1020) օգնությամբ: Աշոտ Բ Երկաթի օրոք (914–928) Գեղարքունիքի գահակալ իշխանությունը վերացվել է, տիրույթները միացվել են Բագրատունիների թագավորությանը:

IX դ–ի վերջին և X դ–ում Ս. ծավալել են շին. գործունեություն (կառուցել են Սևանա կղզու եկեղեցիները, Ահերմոնի վանքը, Գնդեվանքը, 906–ին կատարել Տաթևի վանքի նավակատիքը ևն): X դ–ի կեսին Վասակ Սյունի գահերեց իշխանը փորձել է Շաղդադյաններից գրավել Դվինը, սակայն պարտվել է, որից հետո Վայոց ձորի գահերեց Ս–ի քաղ. ազդեցությունը թուլացել է Սյունիքում: 970–980–ական թթ–ին գահերեցությունն անցել է Բաղքի գահակալ Սմբատին (տես *Սմբատ Ա*), որը 987–ին Սյունիքը հռչակել է առանձին թագավորություն՝ *Սյունիքի թագավորություն*: Վասակ Ա–ի (998–1040) և Սմբատ Բ Աշոտյանի (1040–44) գահակալման տարիներին Սյունիքն ապրել է տնտ. վերելք: Գրիգոր Ա Աշոտյանի օրոք (1044–84) Ս–ի, թագավորությունը ենթարկվել է սելջուկ. թուրքերի հարձակումներին և կորցրել որոշ սահմանային գվթ–ներ:

Գրիգոր Ա Աշոտյանի մահով (1084) Ս–ի թագավոր. ճյուղն սպառվել է, Սյունիքի գահն անցել է Արցախի իշխանական ընտանիքներից սերած *Սևանեքերիմին*:

ՍՅՈՒՆԻՔ, **Սյունյաց աշխարհ, Սիսական**, *Մեծ Հայքի* 9–րդ նհգ–ը: Ընդգրկել է Սևանա լճի ավազանը, Արփա գետի ավազանի մեծ մասը, Որոտան և Հագարու գետերի ավազանները, Նախճավան և Երնջակ գետերի վերին հոսանքների շրջանները (մեծ մասը մտնում է ներկայի ՀՀ տարածքի մեջ): Նհգ–ը ձևավորվել է Մեծ Հայքում *Արշակունիների* հաստատումից հետո, երբ Տրդատ Ա (54–88) թագավորը երկիրը ենթարկել է նոր վարչ. (ըստ «աշխարհների») բաժանման, ձևավորվել է Ս. նհգ–ը: Ս. դարձել է երկրամասի կառավարիչ *Սյունիների* ժառանգ. կալվածքը:

Մեծ Հայքի թագավորության 387–ի բաժանումից հետո Ս. ենթարկվել է Սասանյան Պարսկաստանի գերիշխանությանը, հայ Արշակունիների թագավորության անկումից (428) հետո մտել մարզպան. Հայաստանի կազմի մեջ: VIII դ–ի սկզբից Ս. մտել է Արմինիա ոստիկանության Առաջին Արմինիա երկրամասի կազմի մեջ: Արաբ. տիրապետության շրջանում (VIII–IX դդ.) Ս–ի իշխանությունը կարողացել է պահպանել գոյությունը, նույնիսկ զգալիորեն ուժեղացել, զարգացել են ավատատիր. հարաբերությունները: XII դ–ի վերջին և XIII դ–ի սկզբին հայ–վրաց. զորքերը Զաքարե և Իվանե *Զաքարյանների* գլխավորությամբ Ս. ազատագրել են սելջուկ. տիրապետությունից: IX դ–ից Ս. ապրել է մշակութ. վերելք: 895–ին հիմնադրվել է Տաթևի վարդապետարանը (X–XII դդ–ում դարձել է համահայկ. մշակութ. կենտրոն), 1280–ական թթ–ին՝ Գլաձորի համալսարանը, 1373–ին՝ Տաթևի համալսարանը: Հայտնի են եղել նաև Մաքենյաց, Ցաղաց քարի, Սպիտակավորի, Աստվածածնի, Նորավանքի, Բոլորաբերդի, Եղեգիսի և այլ գրչության կենտրոններ: Ս–ի ճարտ. հուշարձաններից նշանավոր են Տաթևի վանքը, Նորավանքը, Վահանավանքը, Ցաղաց քարի, Մաքենյաց, Շողագավանքը, Սևանա կղզու, Սյունի, Արատեսի վանքերը, Սուլեմայի կարավանատունը ևն:

1555–ի Ամասիայի և 1639–ի Կասրե–Շիրինի պայմանագրերով Ս. անցել է Սեֆյան Պարսկաստանին, 1590–ի հաշտությամբ՝ Օսմ. կայսրությանը: 1720–ական թթ–ին պարսկ. տիրապետության դեմ ապստամբության գլուխ անցած *Դավիթ Բեկը* հաջող կռիվներ է մղել նաև օսմ. թուրքերի դեմ (տես *Հալիձորի ճակատամարտ 1727*): 1805–ին Գյուլակչայի պայմանագրով Զանգեզուրն անցել է Ռուս. կայսրության տիրապետության տակ: 1920–ի հուլիսին բոլշևիկները Ղարաբաղից մտել են Զանգեզուր: Գարեգին *Նժդեհի* ղեկավարությամբ նոյեմբ–ին ողջ Զանգեզուրն ազատագրվել է: Դեկտ. 25–ին հռչակվել է Ինքնավար Սյունիքը, ընտրվել կառ–յուն: 1921–ի ապրիլին կազմվել

է նոր կառ–յուն՝ Գարեգին Նժդեհի գլխավորությամբ, Ինքնավար Սյունիքը Դարալագյազի շրջանի հետ հռչակվել է Անկախ Լեռնահայաստան (տես *Լեռնահայաստանի Հանրապետություն*)՝ Գորիս մայրաքաղաքով: Լեռնահայաստանի մարտիկները սպարապետ Նժդեհի գլխավորությամբ խափանել են ԼՂՀ–ի և Նախիջևանի հետ Զանգեզուրը նույնպես Ադրբեջանին հանձնելու բոլշևիկ. ծրագրերը: 1921–ի հուլիսի 10–ին կառ–յան անդամները, մտավորականությունը և զինվորներն անցել են Պարսկաստան, իսկ Զանգեզուրը մտել է Խորհրդ. Հայաստանի կազմի մեջ:

ՍՅՈՒՆԻՔԻ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ, Ղարաբաղի բարձրավանդակ, Հայկ. լ–աշխարհում՝ Զանգեզուրի և Արցախի լ–շղթաների միջև: Բլրաթմբ. սարահարթ է, միջին բարձր.՝ 2800–3200 *մ*, առլզն՝ 3616 *մ* (Գալի լ.): Երկ.՝ 120 *կմ*, լայն.՝ մինչև 50 *կմ*: Կենտր. մասում են Ծղուկ (358 *մ*) և Իշխանասար (3550 *մ*) հրաբխ. զանգվածները: Կան լճեր (Մեծ Փորակ, Փոքր Փորակ, Ալ, Սև ևն): Ս. բ–ից սկիզբ են առնում Ողոտան, Արփա, Հազարի, Թարթառ գետերը: Լավ է արտահայտված կլիմայի և հողաբուս. ծածկույթի վերընթաց գոտիականությունը:

ՍՅՈՒՆԻՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, Կապանի թագավորություն, հայ ավատատիր. պետություն *Սյունիք* նհնգ–ում 987–1170–ին: Մայրաքաղաքն էր *Կապան* բք–ա: Սյունիքի գահերեց իշխան Վասակ Իշխանիկը IX դ–ի վերջին իրեն հռչակել է թագավոր, բայց շարունակել է ընդունել *Բագրատունիների* գերագահությունը: 987–ին, երբ վերջինս թուլացել է Ատրպատականի արաբ. ամիրության արշավանքների (982–987) պատճառով, *Սմբատ Ա* Սահակյանը Սյունիքը հռչակել է առանձին թագավորություն: Ատրպատականի ամիրայի մահից (988) հետո Սմբատ Ա Սահակյանը նորից ճանաչել է **Սմբատ Բ** Բագրատունու գերիշխանությունը: Հայոց թագավոր Գագիկ Ա 991–992–ին Ս. թ–ից գրավել է Վայոց ձորը, Ճահուկը, Ծղուկի մի մասը և միացրել Անիի թագավորությանը: Երկնչակ ամրոցը, որը X դ–ի սկզբին անցել էր Գողթնի արաբ. ամիրությանը, դարի վերջին կրկին միացվել է Ս. թ–յանը:

Վասակ Ա–ի և *Սմբատ Բ* Աշոտյանի գահակալման տարիներին Ս. թ. ապրել է տնտ. վերելք: Ս. թ–յան տարածք. ամբողջականությունը վերականգնվել է *Սևներսեհ Սևադյանի* կառավարման տարիներին: Սելջուկ գահակալ Մելիք–շահի (1072–92) մահից հետո սելջուկ. տերությունը քայքայվել է, և Ս. թ. վերականգնել է անկախությունը: XI դ–ի վերջին այն կազմում էր Սյունիք նհնգ–ի տարածքի ավելի քան 1/3–ը (շուրջ 5500 *կմ*^{2}), ուներ 43 բերդ, 48 վանք, 1008 գյուղ, մեկ քաղաք և մի քանի գք:

XII դ–ում Ս. թ–յան քաղ. կացությունը ծանրացել է սելջուկ–թուրքերի պարբեր. հարձակումների հետևանքով: Սյունյաց վերջին թագավոր Հասան Գեռաքարեցին (1166–70) հարկադրաբար հեռացել է Արցախ, որով էլ վերջ է դրվել Ս. թ–յանը:

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, վում ՀՀ–ում: Կազմավորվել է 04.12.1995–ին՝ Գորիսի, Կապանի, Սիսիանի և Մեղրու նախկին վարչ. շրջանների տարածքների հիմքի վրա: Տարածքը՝ 4506 *կմ*^{2}, բն.՝ 164,1 հգ. (2009): Ունի 113 համայնք (7–ը՝ քաղաք.), 135 բնակավայր (127–ը՝ գյուղ): Տարածքն զբաղեցնում է *Զանգեզուրի ֆիզիկաաշխարհագրական շրջանը*: Առաջատար ձեռն–ներն են Զանգեզուրի և Ագարակի պղնձամոլիբդեն. կոմբինատները, Կապանի լ–հանք. կոմբինատը: Պատմաճարտ. հուշարձաններից են Թանահատի վանքը (V դ.), Աղուդիի կոթողը (V–VI դդ.), Սիսավանի եկեղեցին (VII դ.), Բաղաբերդը (IV–XI դդ.), Տաթևի վանքը (IX–XIX դդ.), Որոտնավանքը (X–XI դդ.), Տաթևի Մեծ անապատը (XVII դ.), Հալիձորի Հարանց անապատը (XVII դ.), Հալիձորի բերդը (XVII–XVIII դդ.), Մեղրու բերդը (XI–XVIII դդ.) ևն: Հոգևոր սպասարկությունն իրականացնում է ՀԱԵ Սյունյաց թեմը, առաջնորդանիստը Գորիսի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ», հաս–քաղ. պարբերաթերթ (2003–ից, Կապան): Հիմնադիր–խմբ.՝ Սամվել Ալեքսանյան: Հաջորդել է «Սյունիք» (1996–2000, խմբ.՝ Գագիկ Դավթյան), «Սյունյաց աշխարհ» (2000–03) պարբ–ներին:

ՍՅՈՒՆՅԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ, հայ գրերի գյուտից հետո ստեղծված դպրոց, որի նպատակը թարգմ–յան և մեկնության արվ–ը զարգացնելն էր: VIII դ–ում գործել է *Սևքենյաց վանքում* (առաջնորդ՝ Սողոմոն Սաքենացի), այնուհետև տեղափոխվել է նախ իշխանանիստ Շաղատ գք, IX դ–ում՝ *Տաթևի վանք*: Ս. վ–ում դասավանդել են Պետրոս Սյունեցին, Մաթուսաղան, Մովսեսը և ուր., սովորել են *Թեոդորոս Քոթենավորը*, *Ստեփանոս Սյունեցին*, *Սողոմոն Ա Գառնեցին* և ուր.:

ՍՅՈՒՊԵՐՎԻԵԼ (Supervielle) Ժյուլ (1884–1960), ֆրանսիացի գրող: Հեղինակ է «Զգողությունն» (1925), «Անմեղ տաժանակիրը» (1930), «Բանաստեղծություններ թշվառ Ֆրանսիայի մասին» (1941–42), «1939–1945: Բանաստեղծություններ» (1946), «Ծնունդներ» (1951), «Ողբերգական մարմին» (1959) և բանաստեղծությունների այլ ժող–ների, «Մարդը պամպասներից» (1923), «Երիտասարդը կիրակի օրը…» (1955) վեպերի, նաև պատմվածքների, պիեսների:

ՍՅՈՒՐԻԱՅԻ ԲԱՐԲԱՌ, ըստ Հ. Աճառյանի դասակարգման՝ հայերենի «կը» ճյուղի բարբառ: Համարվում է նաև որպես Անտիոքի շրջանում խոսվող մի քանի բարբառների ընդհ. անվանումը:

ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ Լևոն–Զավեն (Սյուրմելյան Զավեն Լևոնի, 1907–1995), գրող, գրականագետ, թարգմանիչ: Հեղինակ է «Լոյս զուարթ» (հայ., 1924) բանաստեղծությունների ժող–ի, «Ձեզ եմ դիմում, տիկիններ և պարոններ» (անգլ., 1945, հայ.՝ 1980) ինքնակենսագր., որտեղ նկարագրված են Մեծ եղեռնի սարսափները, «98,6°» (1950, հայ.՝ 2005) վեպերի, «Վիպագրության տեխնիկա: Չափ և խենթություն» (1968) աշխ–յան, որը ամերիկ. դպրոցներում օգտագործվում է որպես ուս. ձեռնարկ: Ս. հայ–ից անգլ. է թարգմանել «Սասնա ծռեր» (1965) էպոսը և հայկ. հեքիաթների «Անմահության խնձորներ» (1968) ժող–ը: ՀԳՄ Խ. Աբովյանի անվ. մրց. (1983):

ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ Խաչատուր (1751–1827), բառարանագիր, թվաբան, տոմարագետ: ՎԱնտՄՄ անդամ, քհն. (1773): Եղել է Վենետիկի Սբ Ղազարի տպարանապետը: Հեղինակ է «Համառոտ թուաբանութիւն աշխարհաբառ» (1788) աշխ–յան, որտեղ քննել է թվաբանության գործողությունները, «Տոմարագիտութիւն…»–ը (1818) ուսումնասիրության, համահեղ.՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (հ. 1–2, հրտ.՝ 1836–37) բառարանի (Բ–Ջ բառահոդվածներ):

ՍՅՈՒՐՄԵՅԱՆ Արտավազդ (աշխարհիկ անունը՝ Տիգրան, 1889–1951), ձեռագրագետ, պատմաբան, բանասեր, խմբ.: Արք. (1932–ից): 1908–ին՝ «Հայրենիքի քնար», 1909–ին՝ «Սասուն» պարբ–ների հիմնադիր–խմբ., 1924–25–ին՝ *«Հայ խօսնակ»* հանդեսի, 1925–30–ին՝ «Տաթև» տարեցույցի խմբ.: Հեղինակ է «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի Սրբոց Հակոբեանց վանքի» (հ. 1, 1948), «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներու» (հ. 1, 1950) ձեռագրագիտ., «Պատմութիւն Հալէպի հայոց» (հ. Ա–Գ, 1940–50), «Յովհաննէս Կոլոտ Բաղիշեցի եւ Բարգէն աթոռակից Կիլիկեցի» (1938) պատմագիտ., «Պաղրասի բերդը» (1937) և այլ աշխ–ների, նաև հուշագրությունների:

ՍՅՈՒՐՌԵԱԼԻԶՄ (ֆրանս.՝ surrealisme – վերիրապաշտություն), ուղղություն XX դ–ի արվ–ում և գրկ–յան մեջ: Ձևավորվել է Ֆրանսիայում 1920–ական թթ–ին՝ դառնալով ենթագիտակց. արվ–ի (ընազդներ, երազներ, տեսիլքներ) սկզբնաղբյուր: Հավակնել է արմատապես փոխել սովորական մտավոր գործունեության, անգամ հաս. կյանքի ավանդ. դրվածքը, բանականության գերիշխանությունից ազատագրել մարդու ենթագիտակց. մղումները: Ս–ի հիմնադիրներից են գրողներ Լ. Արագոնը, Ֆ. Սուպոն, Պ, Էլյուարը, Ռ. Դեսնոսը, Ա. Արտոն, նկարիչներ Մ. Էռնստը, Ժ. Արպը, Մ. Դյուշանը, Ի. Թանգին, Ս. Դալին, կինեմատոգրաֆիստներ Լ. Բունյուելը, Ժ. Դյուլակը: Ս–ին հարել են կինոյում՝ Ռ. Կլերը, Ժ. Սադուլը, Ժ. Կոկտոն, կերպարվ–ում՝ Պ. Պիկասսոն, Պ. Կլեեն: Տերմինն առաջինը գործածել է Գ. *Ապոլիները*: 1940–ական թթ–ի սկզբից Ս–ի կենտրոնը դարձել է ԱՄՆ, 1945–ից Ֆրանսիայում ուղղությունը վերածնելու անհաջող փորձեր են արվել:

ՄՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆ, անոտիապաշտություն, անոտի հավատ ինչ–որ բանի հանդեպ: Նախապաշարմունք՝ հավատ գերբնական–այնաշխարհային ուժերի նկատմամբ:

ՄՆԱՄԵՋ ԵՂՋԵՐԱՎՈՐՆԵՐ (Bovidae), որոճողների ենթակարգի երկսմբակավոր կենդանիների ընտանիք: Ի տարբերություն *եղջերուների*՝ Ս. ե–ի եղջյուրները ճակատոսկրի ելուստների վրա նստած անամեջ եղջեր. պատյաններ են և աճում են՝ չփոխարինվելով ողջ կյանքի ընթացքում: Ս. ե–ի ընտանիքին են պատկանում ցուլերը, այծերը, խոյերը և այծքաղները:

ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ, անվճարունակություն, ֆիզ. կամ իրավաբ. անձի՝ պարտատերերի նկատմամբ պարտքերը մարելու փաստացի անկարողությունը: Լինում է կամավոր՝ սեփ. նախաձեռնությամբ (կամավոր Ս–յան դիմում) և հարկադրված (պարտատիրոջ պահանջով), եթե պարտապանն անվճարունակ է: ՀՀ–ում 2007–ից կարգավորվում է «Մնանկության մասին» ՀՀ օրենքով:

ՄՆԱՑԱԿԱՆ Գեղամ Գարեգինի (ծ. 1941), ճարտարագետ–տեխնոլոգ: Գղտ. գիտ. դ–ր (1990), պրոֆ. (2002): Աշխ–ները վերաբերում են սննդամթերքի պահպանման, վերամշակման, կենսաքիմիայի և տեխնոլոգիայի խնդիրներին:

ՄՆԱՊԵՅԱՆ Պողոս Մարկոսի (1927–2014), գրող, գրաքննադատ, խմբ.: 1966–2006-ին՝ *«Բագին»* հանդեսի գլխ. խմբ.: Հեղինակ է «Տաղ պատմութեան» (1948), «Ժամանակ չկայ» (1953), «Երախտագիտութեան թակարդը» (2009) վիպակների, «Ես այդ շունն եմ» (1966), «Աղքատներուն աւանդութիւնը» (2002) պատմվածքների ժող–ների, «Երկու սպանդ» (2009), «Կրկէսին մէջ» (հ. 1–3, 1958–2006) հուշագրությունների, «Մեր փարախէն ներս» (2007) հոդվածների ժող–ի և այլ երկերի, գրականագիտ. աշխ–ների:

ՀԳՄ Մ. Նալբանդյանի անվ. մրց. (1991), ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2003):

ՄՆԴԻԿ (Hydrargyrum), Hg, տարրերի պարբեր. համակարգի II խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 80, ա. զ.՝ 200,59: Արծաթավուն հեղուկ մետաղ է, այստեղից՝ նրա լատ. անվանումը, հուն.՝ hydor – ջուր և argyros – արծաթ (ջրարծաթ.), խտ.՝ 13,5 *գ/սմ*^{3}, $t_{հալ.}$՝ 38,86°C, $t_{եռ.}$՝ 356,66°C: Ս–ի գոլորշիները բարձր ջերմաստիճանի և էլ. պարպման ժամանակ ճառագայթում են ԱՄՁ–ով հարուստ կանաչաերկնագույն լույս: Քիմիապես կայուն է: Հիմն. միներալը կինոբարն է՝ HgS, հանդիպում է նաև բնածին Ս.: Կիրառվում է ջերմաչափներում, ճնշաչափներում, գազապարպում. սարքերում, քլորի և նատրիումի հիդրօքսիդի արտադր–յան մեջ (որպես կատոդ): Ս–ի համաձուլվածքները մետաղների հետ *ամալգամներ* են: Ս. և նրա շատ միացություններ թունավոր են:

ՄՆԴԻԿ ՇԱՌԱԶՈՂ, սնդիկի ֆուլմինատ՝ $Hg(ONC)_2$, շառաչող թթվի՝ HONC–ի սնդիկ. աղը, հարուցող պայթուցիկ նյութ է: Անգույն կամ մոխրագույն, ջրում չլուծվող բյուրեղներ են: Օգտագործվում է դետոնացման և բռնկման պատիճներում:

ՄՆԴԻԿԱՅԻՆ ԼԱՄՊ, լույսի գազապարպում. աղբյուր, որտեղ սնդիկի գոլորշիներում էլ. պարպման ժամանակ առաջանում է օպտիկ. ճառագայթում սպեկտրի տեսանելի և ԱՄ տիրույթներում: Կիրառում են լուսավորման (լուսարձակ սարքերում), լուսապատճենահանման, բժշկ. և այլ նպատակներով: Լուսատվությունը՝ մինչև 70 *լմ* և ավելի:

ՄՆԴԻԿԱՅԻՆ ՋԵՐՄԱՉԱՓ, –35–ից մինչև +750°C միջակայքում ջերմաստիճանի չափման սարք: Բարձրջերմաստիճան. Ս. ջ–ներում սնդիկի շերտից վերև եղած մասը լցվում է սեղմած ազոտով, որը մեծացնում է սնդիկի եռման ջերմաստիճանը: Ս. ջ–ի տարատեսակ է բժշկ. ջերմաչափը:

ՄՆԴԻԿԱՉՈՓՈՒԹՅՈՒՆ, մերկուրիմետրիա, քանակ. վերլուծության տիտրաչափ. եղանակ, հիմնված է սնդիկի (II) քիչ դիսոցվող միացությունների (օր.՝ $HgCl_2$–ի, $HgBr_2$–ի) առաջացման վրա:

ՄՆԴԻԿԻ ՍՈՒԼՖԻԴ, Hg_2S, առաջացնում է 2 բյուրեղ. ձևափոխություններ՝ կինոբար (կարմիր) և մետացինաբարիտ (սև), որոնք հանդիպում են բնության մեջ: Չի լուծվում ջրում: Սնդիկի ստացման հիմն. հումք է, ներկերի գունանյութ, հումք՝ լուսադիմադրությունների համար:

ՄՆԴԻԿԻ ՔԼՈՐԻԴՆԵՐ, Hg_2Cl_2 (կալոմել) և $HgCl_2$ (սուլեմա), անգույն բյուրեղ. նյութեր են: Կալոմելը քիչ է լուծվում ջրում, կիրառվում է գալվան. էլեկտրոդներ պատրաստելու համար, բժշկության մեջ օգտագործվում է որպես հակամանրէային միջոց: Սուլեման լավ է լուծվում ջրում, կիրառվում է սերմերի ախտահանման, սպիտակեղենի վարակազերծման համար և որպես օրգ. ռեակցիաների կատալիզորդ: Ս. ք. թունավոր են:

ՄՆԴԻԿՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, մետաղօրգ. միացություններ, որոնց մոլ–ում սնդիկի ատոմն անմիջականորեն միացած է ածխածնի ատոմին: Հայտնի են 2 տիպի Ս. մ.՝ R_2Hg և RHgX, որտեղ R–ն օրգ. ռադիկալ է, X–ը՝ հալոգեն: Կիրառվում են օրգ. սինթեզում՝ որպես սնկասպաններ: Ս. մ. միջանկյալ նյութեր են սնդիկի աղերով կատալիզվող արդ. շարժընթացներում:

ՄՆԵԳԻՐՅՈՎ, Վլադիմիր Ֆեոդորովիչ (1847–1916/17), ռուս բժիշկ, Ռուսաստանում գիտ. գինեկոլոգիայի հիմնադիրներից: Հեղինակ է Ռուսաստանում գինեկոլոգիայի մասին առաջին հիմնարար աշխ–յան («Արգանդի արյունահոսություն», 1884):

ՄՆԵԳՈՎԱ, Իրինա Անատոլևնա (1922–1975), ռուս բանաստեղծուհի, թարգմանչուհի: Հեղինակ է «Քնարական բանաստեղծություններ» (1958), «Օգոստոս» (1963), «Քնարերգություն» (1966), «Ձառիվեր» (1967), «Երեք աններ» (1971), «Խնձորի տարի» (1975) ժող–ների, «Ժամացույցը խփում է» (1962) մանկ. գրքի: Ս. բանաստեղծություններ է նվիրել Հայաստանին, Երևանին («Քարեր», «Առավոտ», «Սահում է վերջալույսը», «Երևանին») և Մ. Սարյանին: Թարգմանել է Հ. Շիրազի, Պ. Սևակի, Վ. Դավթյանի, Ս. Կապուտիկյանի, Գ. Ադդարյանի և ուր. գործերից:

ՄՆԵԳՈՒՐ (Snegur) Միրչա Իոն (ծ. 1940), Մոլդովայի նախագահ՝ 1990–97-ին: 1985–ից՝ Մոլդ. կոմկուսի ԿԿ քարտուղար: 1989–ից՝ Մոլդ. ԽՍՀ ԳԽ նախագահության նախագահ: «Վերածնունդ և համաձայնություն» կուս–յան նախագահ:

ՄՆԵԼ (Snell) Ջորջ Դեվիս (1903–1996), ամերիկացի կենսաբան, իմունոգենետիկ: Ուսումնասիրել է հյուսվածքների համատեղելիության գենետիկ. օրինաչափությունները: Նորելյան մրց. (1980, Բ. *Բենասերաֆի* և Ժ. *Դոսեի* հետ):

ՄՆԵԼԻՈՒՍ (Snellius), Մնել Վիլեբրորդ (1580–1626), նիդեռլանդացի աստղագետ–մաթեմատիկոս: Աշակել է եռանկյունավորման մեթոդը, սահմանել է լույսի բեկման՝ հետագայում իր անունով կոչված օրենքը:

ՄՆԵԼՄԱՆ (Snellmann) Յուհան Վիլհելմ (1806–1881), ֆինն փիլ., հրապարակախոս և պետ. գործիչ, ձախ հեգելականության ներկայացուցիչ, ֆին. ազգ. շարժման գաղափարախոս: Ս–ի շնորհիվ ընդունվել է ֆին–ի և շվեդ–ի իրավահավասարության մասին հրամանագիր:

ՄՆԵՉԿՈՒՍ (Sniečkus) Անտանաս Յուոզովիչ (1902/03–1974), լիտվացի քաղ., կուս. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1973): Լիտվայի կոմկուսի ԿԿ 1–ին քարտուղար (1936–39, 1940–74): 1942–44–ին՝ Լիտվայի պարտիզան. շարժման շտաբի պետ:

ՄՆԵՍԱՐԵՎ, Անդրեյ Եվգենևիչ (1865–1937), ռուս. զորապետ, ռազմ. աշխարհագետ: Գեն–լեյտ. (1917): Մասնակցել է ԱՀՊ–ին. գլխավորել է գունդ, բրիգադ, դիվիզիա, այնուհետև՝ կորպուսի շտաբի պետ: 1918–ից՝ ԲԳԿԲ–ում էր: Ռուսաստանում քաղաքաց. պատերազմի ժամանակ գլխավորել է ԶՕ–ի զորքեր, բանակներ: 1930–34–ին բանտարկվել է. հիվանդության պատճառով ժամկետից շուտ պայման. ազատվել է, արդարացվել:

ՄՆԵՏԿՈՎ, Բորիս Վասիլևիչ (1925–2006), ռուս ռազմ. գործիչ: ԽՍՀՄ բանակի գեն. (1986): 1979–ից՝ մի շարք ԶՕ–ների զորքերի հրամ.: 1987–ից՝ Գերմանիայում խորհրդ. զորախմբի, 1989–90–ին՝ Արմ. զորախմբի գլխ. հրամ.:

ՄՆԽՉՅԱՆ Գրիգոր Լևոնի (1932–2005), ընտրասերումնաբան: Գեղտ. գիտ. դ–ր (1986): Աշխ–ները վերաբերում են տարբեր հողակլիմ. պայմաններում խաղողի մի շարք սորտերի և ընտրատեսակների կենսբ. առանձնահատկություններին:

ՄՆԽՉՅԱՆ Գևորգ (Ժորա) Զարզանդի (ծ. 1950), բանաստեղծ: Վրաստանի հայ գրողների *«Վերնատուն»* միության հիմնադիր–նախագահ (1997), 1998–ից՝ համանուն, գր–գեղ., 1999–ից՝ «Զարթոնք» մանկապատանեկան տարեգրքի խմբ.: Հեղինակ է «Կարոտի կռունկ» (1997), «Քավարան» (2003), «Ընտրանի» (2011) ժող–ների:

ՀՀ ՄՆ ոսկե (2010), ՄՆ «Վիլյամ Սարոյան» (2011), «Մովսես Խորենացի» (2013) մեդալներ, Վրաստանի «Պատվո շքանշան» (1999):

ՄՆԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **միկոլոգիա** (< հուն. mykes – սունկ և *...լոգիա*), ***սնկերն*** ուսումնասիրող գիտ–յուն: Հայաստանի սնկերի տեսակների մասին առաջին հիշատակումները հանդիպում են ***Ամիրդովլաթ Ամասիացու*** (XV դ.) երկերում: Առաջին գիտ. սնկաբան. ուսումնասիրությունները կատարվել են Խաղողագործության, գինեգործության և պտղաբուծության ԳՀԻ–ում: 1957–2000-ին Բուսաբ–յան ինստ–ում՝ ՀՀ առանձին տարածքներում վայրաճ բույսերի միկրոֆլորայի հետազոտման աշխ–ների հիման վրա հրատարակվել է «Այսրկովկասի սնկերի որոշիչները» (1985) ժող–ը: ՀՀ ԳԱԱ մանրէաբանության ինստ–ում ուսումնասիրել են խմորիչների արտադր–յան մեջ օգտագործվող բազիդիավոր խմորասնկերի միկոբիոտան, տիեզ. տեխնիկայում կիրառվող պոլիմեր. նյութերի սնկակայունությունն ու ջերմասեր սնկերը: ԵՊՀ–ում կատարվում են կենսատեխնոլոգ. ուղղվածության աշխ–ներ: Երևանի տարբեր կլինիկաներում և ԵՊՀ բուսաբ–յան ամբիոնում ուսումնասիրել են մարդու սնկ. հիվանդությունների հարուցիչները: ԵՊՀ բուսաբ–յան ամբիոնում ստեղծվել է (1945) սնկաբան. գիտ. հերբարիում (ERMH)՝ շուրջ 11 հզ. նմուշով և մոտ 4500 տեսակով (2010): Մակրոսկոպիկ սնկերի հազվագյուտ և անհետացող տեսակներն ընդգրկվել են ՀՀ Կարմիր գրքում, 2004–ին ստեղծվել է «Էկոֆունգ» հայկ. սնկաբան. ընկ–ը:

ՄՆԿԱԽՏԵՐ, **միկոզներ** (հուն.՝ mykes – սունկ), մարդու և կենդանիների հիվանդություններ. հարուցիչներն ախտածին սնկերն են: Տարբերում են մաշկի (դերմատոմիկոզներ) և ներքին օրգանների U.: Կենդանիները կարող են թունավորվել նաև բուս. կերերը թունավորող սնկերի տոքսիններով (միկոտոքսիկոզներ): Որոշ U–ով հիվանդանում են միայն մարդիկ կամ կենդանիները, մյուսներով՝ մարդը (վարակվում է կենդանիներից), օր.՝ միկոսպորիայով:

ՄՆԿԱԿԵՐՆԵՐ (Mycetophagidae), բզեզների ընտանիք: Երկ.՝ 2–6 *մմ*: Հայտնի է 200 տեսակ: Ապրում են սնկերում և փտած բնափայտում: Մնվում են հիմնականում սնկամարմիններով (միցելիումներ):

ՄՆԿԵՐ (Fungi, Mycetes), ստորակարգ կորիզավոր (էուկարիոտ) օրգանիզմների ինքնուրույն թագավորություն (նախկինում դասում էին ստորակարգ բույսերի շարքը)։ Զուգակցում են ինչպես բույսերի հատկանիշները (անշարժություն, գագաթային աճ, բջջապատի առկայություն ևն), այնպես էլ կենդանիներինը (նյութափոխանակության տարասուն տիպ, խիտինի առկայություն, միզանյութի առաջացում ևն)։ Հայտնի է ավելի քան 100 հզ. տեսակ։ Վեգետատիվ մարմինը սնկամարմնի (միցելիում) տեսքով է (բացառությամբ ներբջջ. մակաբույծների)։ Բազմանում են վեգետատիվ, անսեռ (սպորներով) և սեռ. ճանապարհներով։ Տարբերում են 3 բաժին՝ իսկական Ս., օոմիցետներ և լորձնասնկեր (միքսոմիցետներ), և 5 դաս՝ իսկական Ս. (խիտրիդիոմիցետներ, զիգոմիցետներ, ասկոմիցետներ, բազիդիոմիցետներ և անկատար Ս.)։ Հողում հանքայնացնում են բուս. մնացորդները, ախտածին Ս. առաջացնում են բույսերի, կենդանիների և մարդու հիվանդություններ։ Բորբոսանկերի մի շարք տեսակներ օգտագործում են մանրէաբան. արդ-յան մեջ՝ վիտամիններ, հակաբիոտիկներ, ֆերմենտներ, ստերոիդային հորմոններ ստանալու համար։ Բազմաթիվ Ս. ուտելի են, խմորասնկերը կիրառում են հացաթխման և գինեգործության մեջ։ Մի շարք տեսակներ մշակում են (շամպինյոններ, գետնասնկեր)։ Թունավոր Ս. առաջացնում են թունավորումներ (վտանգավոր են դժգույն և սպիտակ գարշասնկերը, կարմիր և հովազ. ճանճասպանները)։

ՄՆՅԱՏԻՆ, ք. Ուկրաինայի Իվանո-Ֆրանկովսկի մարզում՝ Պրուտ գետի ափին։ Բն.՝ 10,1 հզ.։ Հայտնի է XII դ.-ից։ Ս-ում հայերը հաստատվել են XVI դ.-ում, տեղափոխվել են Մոլդովայից։ Հայերն զգալի կշիռ են ունեցել Ս-ի տնտ-յան կյանքում, զբաղվել են արտաքին առևտրով, այգեգործությամբ։ Կառուցել են եկեղեցի՝ Սբ Աստվածածին։ 1894-ին եղել է 420 հայ, այնուհետև համայնքն աստիճանաբար մարել է։

ՄՆՆԴԱԿԱՐԳ, դիետա (հուն.՝ dieta – կենսակերպ), հատուկ ընտրված քանակով, քիմ. բաղադրությամբ, կալորիականությամբ և խոհարար. մշակման ենթարկված սննդի օրաբաժին, ինչպես նաև ռեժիմ։

ՄՆՆԴԱՄԹԵՐՔ, բնական վիճակում կամ վերամշակելուց հետո սննդում օգտագործվող բուս. և կենդ. ծագման մթերքներ, որոնք անհրաժեշտ են օրգանիզմի բնականոն կենսագործունեության, ծախսված էներգիայի լրացման, ինչպես նաև բջիջների և հյուսվածքների կառուցման ու վերականգնման համար։

Մեծ խումբ են կազմում **արհեստական** Ս-ները, որոնք պատրաստվում են բնական նյութերից (ամինաթթուներ, սպիտակուցներ, լիպիդներ, ածխաջրեր, ձեթեր ևն)։

ՄՆՆԴԱՅԻՆ ԱՐԺԵՔ, սննդամթերքի հիմն. բնութագիրը՝ նրանում պարունակվող սննդանյութերի (սպիտակուցներ, ճարպեր ևն) քանակությունը և հարաբերակցությունը։

ՄՆՆԴԱՅԻՆ ԹԹՈՒՆԵՐ, կարբոնաթթուներ (քացախաթթու, կիտրոնաթթու, խնձորաթթու ևն), որոնք օգտագործվում են որպես պահածոյացնող միջոցներ և հրուշակեղենին, կոմպոտներին, մուրաբաներին և այլ սննդամթերքի թթվաշ համ տալու համար։

ՄՆՆԴԱՅԻՆ ՀԱՎԵԼԱՆՅՈՒԹԵՐ, բնական կամ սինթետիկ միացություններ, որոնք ավելացվում են սննդամթերքին՝ արտադր-յան, համային որակի լավացման պահպանման կամ տեղափոխման ժամանակ։ Ս. հ. են պահածոյացնողները (բենզոյական թթու ևն), հակաօքսիդիչները (ասկորբինաթթու ևն), խտարարները ևն, դոնդողառաջացնողները (ագար, օսլա, տանին ևն), սնդ. ներկանյութերը (կարոտինոիդներ ևն), համի և հոտի ուժեղարարները և համային նյութերը (գլուտամինաթթվի աղեր, շաքար, կերակրի աղ), վիտամինները, մակրոտարրերը ևն։

ՄՆՆԴԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԵՐ, հեղուկ կամ պինդ խառնուրդներ, որոնց վրա (լաբորատորիաներում կամ արդ. պայմաններում) աճեցվում են միկրոօրգանիզմներ։ Պարունակում են ածխածնի, ազոտի, ֆոսֆորի, վիտամինների և այլ բաղադրամասերի աղբյուր ծառայող միացություններ, որոնք կարևոր են միկրոօրգանիզմների կենսագործունեության համար։

ՄՆՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, սննդամթերքի, ինչպես նաև ծխախոտի, օճառի, լվացքի միջոցների, օծանելիքի ևն արտադր-յան արդ. ճյուղերի համախումբ։ Ներառում է կաթի, հացաթխման, հրուշակեղենի–մակարոնի, մսի, ծխախոտի, գինու, կոնյակի, հանք. ջրերի, գարեջրի, աղի, ձեթ–օճառի արդ-յան ճյուղերը։ Տես նաև *Վերամշակող արդյունաբերություն*։

ՄՆՆԴԻ ԿԵՆՏՐՈՆ (ֆիզիոլոգ.), կառուցվածքների ամբողջություն գլխուղեղում (ենթատեսաթմբում, կիսագնդերի կեղևում), որը կարգավորում է սննդի ընդունությունը (պահանջը կամ մերժումը) և մարսողության սկզբն. փուլերը։

ՄՆՆԴԻ ՕՐԱԲԱԺԻՆ, մեկ մարդու համար սննդի օրական քանակը։ Մննդամթերքի հավաքակազմը և նրանց խոհարար. մշակման մեթոդները որոշում են՝ հաշվի առնելով մարդու տարիքը, սեռը, աշխ. գործունեությունը, կլիմ. պայմանները ևն։

ՄՆՈՊԼՅԱՆ Հմայակ Հարությունի (1907–1985), ԽՄ հերոս (1945), ավազ։ Կոչմանն արժանացել է Նեմանի գետանցման ժամանակ (1944-ի հուլիս) ցուցաբերած խիզախության համար։

ՄՆՈՐԻ ՍԹՈՒՐԼՈՒՍՈՆ (Snorri Sturluson, 1178–1241), իսլանդացի բանաստեղծ-սկալդ։ Հեղինակ է սկանդ. դից-յան և պոեզիայի մասին «Կրտսեր Էդդան» («Մնորրինյան Էդդա», 1222-ից հետո) աշխ-յան, որտեղ ներկայացրել է առասպելներից հատվածներ և բազմաթիվ երգ-բանաստեղծություններ, նաև իր պոեմը, Նորվեգիայի մինչև 1177-ի պատմությունն արտացոլող «Երկրաշրջան» (մոտ 1225–30) արքայական սագայի։

ՄՆՈՈՒ (Snow) Զառլզ Պերսի (1905–1980), անգլիացի գրող, հրապարակախոս։ Հեղինակ է «Օտարները և եղբայրները» («Վերադարձ տուն», 1956, «Իշխանության միջանցքները», 1964, ևն) ռեալիստ. վիպաշարի, «Իմաստության պահապանները» (1974), «Մահ առագաստների տակ» (1932), «Գունազարդում» (1979) վեպերի, «Երկու մշակույթ» (1971) հոդվածների ժող-ի, նաև գրողների կենսագրությունների։

ՄՆՈՖՐՈՒ, Եգիպտոսի փարավոն, IV հարստության (մ. թ. ա. XVII դ.) հիմնադիրը։ Կառավարումը նշանավորվել է արշավանքներով (Նուբիա, Լիբանան) և եռանդուն շին. գործունեությամբ։

ՄՆՈՒՆԴ, օրգ. և անօրգ. նյութերի ամբողջություն, որն ստանում են մարդն ու կենդանիները շրջակա միջավայրից և օգտագործում հյուսվածքները կառուցելու, վերականգնելու, կենսունակությունը պահպանելու, էներգիայի ծախսը լրացնելու համար։ Կենդանիները լինում են բուսակերներ, մսակերներ (գիշակերներ) և ամենակերներ։ Սակայն կենս. ցիկլի հերթափոխվող փուլերով կենդանիներին յուրաքանչյուր փուլում հատուկ է Ս-ի որոշակի տեսակ։ Օր.՝ գորտի թրթուրները՝ շերեփուկները, բուսակեր են, հասուն անհատները սովորաբար՝ գիշակեր։ Մարսող. համակարգի կառուցվածքն ու ֆունկցիաները խիստ հարմարված են ընդունած Ս-ին։

Մննդանյութերի օրական պահանջը տղամարդկանց համար՝ սպիտակուցներ՝ 82–118 *գ*, կենդանիներինը՝ 45–65 *գ*, ճարպեր՝ 93–158 *գ*, ածխաջրեր՝ 344–602 *գ*, էներգ. արժեքը (կալորիականությունը)՝ 10,88–17,97 *կՋ* (2550–4300 *կկալ*)։ Կանանց համար՝ 15 %-ով քիչ։

ՄՆՈՒՅՈՂԱԿԱՆ ԽՈՑ, հյուսվածքների ուշ լավացող արատ, որն առաջանում է առավելապես արյան և ավշի շրջանառության խանգարումների, խոշոր նյարդերի կամ ողնուղեղի վնասվածքների և նրա որոշ հիվանդությունների (օր.՝ սիրինգոմիելիայի) ժամանակ։

ՍՈԱՐԻՇ (Soares) Մարիու (1924–2017), Պորտուգալիայի նախագահ՝ 1986–96-ին, վարչապետ՝ 1976–78 և 1983–85-ին։ Պորտուգալիայի սոց. կուս-յան գլխ. քարտուղար՝ 1973–85-ին։

ՍՈԲԱՏ, գետ Եթովպիայում և Սուդանում, Սպիտակ Նեղոսի ձախ վտակը։ Երկ. Բարր գետի ակունքից՝ 730 *կմ*, ավազանը՝ մոտ 350 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 412 *մ*^{3}/*վ*։ Ամառ. անձրևների ժամանակ Գաբելա ք-ի մոտից նավարկելի է։

ՍՈԲԵՄԿԻ (Sobieski) Յան, **Յան III Սոբեսկի** (1629–1696), Ռեչ Պոսպոլիտայի թագավոր՝ 1674-ից, զորավար։ Թուրքերի դեմ պայքարում դաշնակցել է ավստրիացի *Հաբսբուրգների* հետ և օգնության հասնելով նրանց՝ 1683-ի սեպտ. 12-ին Վիեննայի մոտ գլխովին ջախջախել թուրք. բանակը։ Այդ ճակատամարտում Ս-ու զորքում կռվել է 5 հզ. լեհահայ։ Ռուսաստանին հակաթուրք. դաշինքի մեջ ներգրավելու համար նրա հետ կնքել է (1686) «Հավիտյան խաղաղություն»։ Թուրքիայի թիկունքում, նրան հակազդելու համար, ձգտել է վերականգնել Հայաստանի անկախությունը։ Այդ նպատակով բանակցել է կաթողիկոսներ *Հակոբ Դ Ջուղայեցու* և *Նահապետ Ա Եղեսացու* հետ։ Սակայն Ս-ու մահով ընդհատվել է ծրագրի իրագործումը։

ՍՈԲՀՈՒԶԱ II (Sobhuza II, 1899–1982), *Սվազիլենդի* թագավոր՝ 1921-ից։

ՍՈԲՈԼԵՎ Լեոնիդ Սերգեևիչ (1898–1971), ռուս գրող։ Սոց. աշխ. հերոս (1968)։ Հեղինակ է նախահեղ. ռուս. նավատորմիղի մասին «Հիմնանորոգում» (1932–62) վեպի, «Ծովային հոգի» (1942) պատմվածքների ժող-ի, որտեղ պատկերել է նավաստիների սխրագործությունները։ ԽՍՀՄ Պետ. մրց. (1943)։

ՍՈԲՈԼԵՎ Սերգեյ Լվովիչ (1908–1989), ռուս. մաթեմատիկոս։ ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939)։ Սոց. աշխ. հերոս (1951)։ Աշխ-ները վերաբերում են առաձգ. ալիքների տեսությանը, մաթ. ֆիզիկայի հավասարում-

ներին, ֆունկցիոնալ վերլուծությանը, հաշվող. մաթ–ին:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1951, 1953,1986):

ՍՈԲՈԼԵՎ Վլադիմիր Ստեպանովիչ (1908–1982), ռուս. երկրաբան: ԽՍՀՄ (1958) և Ուկր. ԽՍՀ (1951) ԳԱ-ների ակադ.: Սոց. աշխ. հերոս (1978): Աշխ-ները վերաբերում են սիլիկատների հանքաբանությանը, ապարաբանության, լեռն. ապարների, մագմատիզմի և փոխակերպության տեսության հարցերին:

ԽՍՀՄ Պետ. (1950), Լենինյան (1976) մրց–ներ:

ՍՈԲՈԼԵՎՍԿԻ Պյոտր Գրիգորևիչ (1782–1841), ռուս. մետաղագործ: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1830): Վ. Վ. *Լյութարակիի* հետ մշակել է (1826) բնածին պլատինի մաքրման (աֆինաժ), կոելի պլատինի ստացման և նրանից իրերի պատրաստման եղանակներ: Սկզբնավորել է փոշեմետաղագործությունը:

ՍՈԳԵ (Sauguet) Անրի (1901–1989), ֆրանսիացի կոմպոզիտոր: Հեղինակ է «Կոնտրաբաս» (1930), «Պարմի մենաստանը» (1939) և այլ օպերաների, նաև բալետների, կանտատների, սիմֆ. երկերի, կինոերաժշտության:

ՍՈԳԻՆՅԱՆ Թադեոս Անդրեասի (Սոգինյանց տեր Թադեոս Տեր–Անդրեասյան), XVIII դ–ի վերջին քառորդի–XIX դ–ի 1–ին տասնամյակի լուսավոր. գործիչ, բանաստեղծ, քին. (Սադրաս): Հեղինակ է հայ ժողդ–ի և Հայաստանի վիճակի ու ապագայի քննությանը նվիրված «Ողբ Հայաստանեայց» (1791) պոեմի:

ՍՈԳՆԵ ՖՅՈՐԴ, ծովածոց Հս. ծովում, ամենախոշորը՝ Նորվեգիայում: Երկ.՝ 204 *կմ*, լայն.՝ 6 *կմ*, խոր.՝ մինչև 1208 *մ*:

ՍՈԴԱ, նատրիումի կարբոնատի տեխ. անվանումը: Անջուր Na_2CO_3–ը կոչվում է կալցինացված սոդա կամ բյուրեղական (բյուրեղահիդրատը՝ $Na_2CO_3·10H_2O$), հիդրոկարբոնատը՝ $NaHCO_3$՝ խմելու (սննդի): Անգույն բյուրեղներ են, ջր. լուծույթները հիմնային են: Na_2CO_3–ը կիրառվում է ապակու, օճառի եփման, մանածագործ., թաղանթանյութ–թղթի արդ–յան մեջ, նավթի մաքրման համար ևն, $NaHCO_3$–ը՝ արհեստ. հանք. ջրերի արտադր–յան, բժշկության մեջ և կենցաղում:

ՍՈԴԱԼԻԹ, կարկաս. ամինասիլիկատ. միներալ՝ $Na_8[AlSiO_4]_6Cl_2$: K, Ca, S խառնուրդ: Կապույտ են, գորշ, կանաչավուն: Հատիկ. զանգվածներ են: Կարծր.՝ 5,5–6,0, խտ.՝ 2,3 $գ/սմ^3$: Ս–ի արհեստ. տարատեսակի լուսաքրոմ. հատկությունն օգտագործում են ռադիոէլեկտրոնիկայում և հեռուստատեսությունում:

ՍՈԴԴԻ (Soddy) Ֆրեդերիկ (1877–1956), անգլիացի ճառագայթաքիմիկոս: Լոնդոնի թագավոր. ընկ–յան անդամ (1910), Շվեդիայի, Իտալիայի, ԽՍՀՄ (1924) ԳԱ-ների արտ. անդամ: Սշակել է (1903, Է. *Ռեզեր–ֆորդի* հետ) ճառագայթաակտիվ տրոհման տեսությունը: Ներմուծել է (1913) իզոտոպների գաղափարը: Ձևակերպել է (1913, Կ. *Ֆայանսի* հետ) ճառագայթաակտիվ տեղաշարժման կանոնը: Փորձն. ճանապարհով ապացուցել է (1915) ռադիումի առաջացումն ուրանից: Նորելյան (1921), Կանիցարոյի անվ. (1913) մրց–ներ:

ՍՈԴՈՄ ԵՎ ԳՈՄՈՐ, աստվածաշնչ. ք–ներ Հորդանան գետի կամ Մեռյալ ծովի արմ. ափին. բնակիչների այլասերվածության պատճառով կործանվել են երկնք. հրով: Աստված հրից դուրս է բերել միայն Լոթին ու նրա ընտանիքին: Փխբ. իմաստով՝ քաոս, խառնաշփոթ, այլասերում:

ՍՈԴՔ, Սոթք, Ծավդեք, Զոդ, գվո *Սյունիք* նհնգ–ում: Ընդգրկել է Գեղամա լճի հվ–արլ. ափամերձ շրջանը՝ Սավդից կամ Սազրա (*Սապրիկ*) գետի և դրա վտակների հովիտները: Ս–ի ոսկին շահագործվել է մ. թ. ա. II հզ–ամյակից: ՀՀ–ում եղել է Սոդացի նախարար. տան ժառանգ. տիրույթը՝ Սոդք իշխանանիստ կենտրոնով: XIII–XVI դդ–ում պատկանել է *Դոփյաններին*, XVI դ–ից՝ *Մելիք–Շահնազարյաններին*: Արլ. Հայաստանը Ռուս. կայսրությանը միացվելուց (1828) հետո Մելիք–Շահնազարյանները կորցրել են մելիք. իրավունքները:

Ս–ի տարածքը հիմնականում համապատասխանել է ՀԽՍՀ Վարդենիսի շրջանին, 1995–ից ընդգրկվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի մեջ:

ՍՈՂՔ, Սոթ, գետ Գեղարքունիքի մարզում, Մասրիկի աջ վտակը: Երկ.՝ 21 *կմ*, ավազանը՝ 59,5 $կմ^2$, ջրի միջին ծախսը՝ 0,28 $մ^3/վ$: Սկիզբ է առնում Սևանի լ–շղթայի արմ. լանջերից՝ 2670 *մ* բարձր–ից:

ՍՈՂՔԻ ԼԵՌՆԱՆՁՔ, Արլ. Սևանի լ–շղթայում՝ 2366 *մ* բարձր–յան վրա: Սևանա լճի ավազանը կապում է Թարթառ գետի հովտին:

ՍՈՂՔԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐ, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Արլ. Սևանի լ–շղթայի հս–արմ–ում: Հանքամարմինները ներկայացված են մի քանի 100 *մ* երկ–յան և 0,5–3 *մ* հաստ–յան քվարց. երակներով և շտոկվերկ. բնույթի երակիկացանավոր հանքայնացմամբ: Հայտնի է մ. թ. II հզ–ամյակից և ընդմիջումներով շահագործվել է մինչև IV դ.: 1976–ից շահագործվում է բաց և ստորգետնյա եղանակներով:

ՍՈՂՔԻ ՁՐԱՆՁՔ, ՀՀ Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Սոթք գետի աջ ափից: Շահագործվել է 1961–ին: Երկ.՝ 7,6 *կմ*, ջրթողունակությունը՝ 0,7 $մ^3/վ$: Ողոգում է Սոթք և Տրետուք գ–երի հողատարածքները:

ՍՈԺ, գետ ՌԴ–ում և Բելառուսում (մասնակիորեն սահմանակից է Ուկրաինային), Դնեպրի ձախ վտակը: Երկ.՝ 648 *կմ*, ավազանը՝ 42,1 հզ. $կմ^2$, ջրի միջին ծախսը՝ 219 $մ^3/վ$: Լուղարկելի է և նավարկելի 373 *կմ*:

ՍՈԼ, եվրոպ. նոտագրության մեջ երաժշտ. 7 հնչյուններից: Հիմն. դիատոնիկ դո մաժոր գամմայի հնչյունաշարի V աստիճանը: Նշվում է լատ. G տառով:

ՍՈԼԱՆԱ (Solana) Խոսե (1886–1945), իսպանացի նկարիչ, գրաֆիկ: Հեղինակ է ազգ. թեմաներով արտահայտիչ, գրոտեսկ. գործերի («Փոքրիկ խնջույք Պոմբո սրճարանում», 1920):

ՍՈԼԱՆԱ, Ֆրանսիսկո Խավիեր Սոլանա դը Մադարիագա (Solana Madariaga, ծ. 1942), իսպանացի քաղ. գործիչ, պինդ մարմնի ֆիզիկոս: ԵՄ խորհրդի գլխ. քարտուղար, ԵՄ բարձրաստիճան ներկայացուցիչ ընդհ. արտաքին և անվտանգության քաղ–յան գծով (1999–2009), միաժամանակ, 1999–2004–ին՝ Արևմտաեվրոպ. միության գլխ. քարտուղար, 2004–ից՝ Եվրոպայի պաշտպ–յան գործակալության ղեկ.: 1982–88–ին՝ Իսպանիայի մշակույթի, 1988–92–ին՝ կրթության և գիտ–յան, 1992–95–ին՝ ԱԳ նախարար: 1995–99–ին՝ ՆԱՏՕ–ի գլխ. քարտուղար: Իսպանիայի սոց. բանվ. կուս–յան առաջնորդներից:

ՍՈԼԱՊՈՒՐ, ք. Հնդկաստանի Մահարաշտրա նհնգ–ում: Բն.՝ 951,1 հզ. (2011): Բամբակե գործվածքների արդ–յան խոշոր կենտրոն է:

ՍՈԼԱՐԱՅԻՆ ՅՈՒՂ, ալկալիական մաքրման ենթարկված նավթի թորման ար–գասիք, $t_{եռ.}$՝ 240–400°C: Օգտագործվում է որպես դիզվառելիք, սառեցնող ու մխող հեղուկ և կաշեգործության մեջ:

ՍՈԼԱՐԻ (Solari) Պիետրո Անտոնիո (1450–1453–ի միջև–1493), իտալացի ճարտ.: 1490–ից Ռուսաստանում մասնակցել է Մոսկվայի Կրեմլի պարիսպների աշտարակների (1490–93) և Գրանովիտյան պալատի (1487–91, Մ. *Ֆրյազինի* հետ) շին–յանը:

ՍՈԼԹ ԼԵՅՔ ՍԻԹԻ (Salt Lake City), ք. ԱՄՆ–ի արմ–ում՝ Մեծ Աղի լճի մոտ, Յուտա նհնգ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 183 հզ., ագլոմերացիայում՝ 1,1 մլն–ից ավելի (2010): Տրանսպորտ. խոշոր կենտրոն է: Ունի օդանավակայան: Այստեղ են ԱՄՆ արդ. բանկերի գլխամաս. գրասենյակները, բարձր տեխնոլոգիաների ձեռն–ները: Հիմնել են մորմոնները 1847–ին, քաղաքում ստեղծել են կրոն. կենտրոն: Ս. Լ. Ս–ում են անցկացվել XIX ձմեռ. օլիմպ. խաղերը (2002):

ՍՈԼԺԵՆԻՑԻՆ Ալեքսանդր Իսաևիչ (1918–2008), ռուս գրող, հրապարակախոս: ՌԴԱ ակադ. (1997): 1945–ին բանտարկվել է հակախորհրդ. ելույթների համար: 1945–53–ին եղել է համակենտրոնացման ճամբարներում, 1953–56–ին աքսորվել է Ղազախստան, 1957–ին՝ արդարացվել: 1974–94–ին՝ վտարանդի: Հեղինակ է «Իվան Դենիսովիչի մեկ օրը» (1962), «Մատրյոնայի կալվածքը» (1963, հայ.՝ 2015) պատմվածքների, «Առաջին շրջագծում», «Քաղցկեղի մասնաշենք» (երկուսն էլ՝ 1968, հրտ.՝ արտերկրում), «14 թվականի օգոստոսը» (1971), «Կարմիր անիվ» (հ. 1–10, 1971–91) վեպերի, «Պոզահարել է հորթուկը կաղնուն» (1975, լրց.՝ 1991) ինքնակենսագր. երկի: «Արշիպելագ Գուլագ» (հ. 1–2, 1973–74, ԽՍՀՄ–ում տարածվել է գաղտնի) վեպում բացահայտել է խորհրդ. բանտային–ճամբարային (1918–56) համակարգի դաժան իրականությունը: Կանխագուշակել է սոցիալիզմի փլուզումը, հիմնավորել է նրա բարոյական և տնտ. անհնությունը, պաշտպանել քրիստ. արժեքները: Նոբելյան (1970), ՌԴ Պետ. (2006) մրց–ներ:

ՍՈԼԻԴՈԼՆԵՐ (< լատ. solidus – խիտ և oleum – յուղ), հակաշփական պլաստիկ քսանյութեր, ստացվում են նավթայուղերի՝ կալցիում. օճառներով թանձրացմամբ: Ջրում անլուծելի են: Աշխատում են 70°C–ից բարձր ջերմաստիճաններում:

ՍՈԼԿ (Salk) Ջոնաս Էդվարդ (1914–1995), ամերիկացի մանրէաբան: Ստեղծել է վակցինա գրիպի (1942–44), պոլիոմիելիտի (1953–54) դեմ: Լասկեր–Դերեյկի մրց. (1956):

ՍՈԼՆՑԵՎԱ. Յուլյա Իպպոլիտովնա (1901–1989), ռուս. դերասանուհի, կինոռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1981): Ա. Պ. *Դովժենկոյի* կինը: Նկարահանվել է կինոյում («Ալելիտա», «Ծխախոտագործուհին Մոսսելպրոմից» ևն): Ա. Դովժենկոյի սցենարներով և ստեղծագործություններից մոտիվներով բեմադրել է «Պոեմ ծովի մասին» (1958), «Բոցավառ տարիների պատմությունը» (1961) և այլ գործեր:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1949):

ՍՈԼՈ (իտալ.՝ solo, < լատ. solus – մեկ, միակ, մենակ), 1. բազմաձայն երկի ***նվագամաս***, ***երգամաս*** կամ մի դրվագ, որը կատարում է մենակատարը (որոշ դեպքերում՝ մի քանի երաժիշտ), մենանվագ, մեներգ, բալետում՝ մենապար: 2. Մեկ կատարողի համար նախատեսված (նվագակցությամբ կամ առանց նրա) գործիք. պիես:

ՍՈԼՈԳՈՒԲ Ֆեոդոր (Տետերնիկով Ֆեոդոր Կուզմիչ, 1863–1927), ռուս գրող: Հեղինակ է «Բոցեղեն շրջան» (1908) բանաստեղծությունների, «Մահվան խայթոց» (1904), «Այրվող դիմակներ» (1907) պատմվածքների ժող-ների, «Ընչին սատանան» (1905), «Արարվող լեգենդ» (մաս 1–3, 1907–13) վեպերի, «Քաղաքական փոքրիկ հեքիաթներ» (1905–07) ցարին և նրա մերձավորներին քննադատող էպիգրամների: Հայ. հրատարակվել է «Ոսկե սանդուղք» (1911) երկը:

ՍՈԼՈՄԵՆՑԵՎ Միխայիլ Սերգեևիչ (1913–2008), ռուս. պետ. և կուս. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1973, 1983): 1971–ից՝ ՌԽՖՍՀ ՆԽ նախագահ: 1983–88–ին՝ ԽՄԿԿ ԿԿ-ին առընթեր կուս. վերահսկողության կոմիտեի նախագահ, ԽՄԿԿ ԿԿ քաղբյուրոյի անդամ:

ՍՈԼՈՄԵՆՑԵՎ Յուրի Միխայլովիչ (ծ. 1939), ավտոմատացման բնագավառի ռուս գիտնական: ՌԳԱ թղթ. անդամ (1987): Աշխ-ները վերաբերում են ավտոմատ նախագծման համակարգերի ստեղծման և մեքենաշինության ավտոմատացման լավարկման խնդիրներին: Լենինյան (1972) և ԽՍՀՄ Պետ. (1986) մրց-ներ:

ՍՈԼՈՄԻՆՆԵՐ, ռուս դերասաններ, եղբայրներ: **Յուրի Մեֆոդիևիչ Ս.** (ծ. 1935), ԽՍՀՄ ժող. արտիստ (1988): 1957–ից՝ Մոսկվայի Փոքր թատրոնի (1988–ից՝ գեղ. ղեկ.) դերասան (Սիրանո՝ Է. Ռոստանի «Սիրանո դը Բերժերակ», Պրոտասով՝ Լ. Ն. Տոլստոյի «Կենդանի դիակ», Ֆամուսով՝ Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս», ևն): Նկարահանվել է կինոյում («Նորին գերազանցության համարզը», հեռուստաֆիլմ, «Տառապանքի ուղիներով», «Դերսու Ուզալա», «Սպիտակ գիշերվա մեղեդիները» ևն): ՌԽՖՍՀ (1971), ՌԴ (2001) Պետ. մրց-ներ: **Վիտալի Մեֆոդիևիչ Ս.** (1941–2002), ՌԴ ժող. արտիստ (1992): 1963–85–ին և 1988–ից՝ Մոսկվայի Փոքր թատրոնի դերասան (Չացկի՝ Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս», Ֆիեսկո՝ Ֆ. Շիլլերի «Ֆիեսկոյի դավադրությունը Ջենովայում», Իլեստակով՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», ևն): Նկարահանվել է կինոյում («Միբիրիադա», «Ձմեռային բալ», «Ձմեռային բալ–II», ֆիլմաշար, «Շերլոք Հոլմսի և դոկտոր Վաթսոնի արկածները», հեռուստաֆիլմ, ևն):

ՍՈԼՈՆ (մ. թ. ա. 640-ի և 635-ի միջև–մոտ 559), աթենացի արքոնտ (594): Իրականացրել է բարեփոխումներ (վերացվել են հողային պարտքը, պարտային ստրկությունը ևն): Քաղաքացիները, ըստ գույքացենզի, բաժանվել են 4 դասի: Իշխանության բարձրագույն մարմինը դարձել է ժող. ժողովը: Անտիկ ավանդությունը Ս-ին համարում է հույն 7 իմաստուններից մեկը:

ՍՈԼՈՆԳՈՅ (Mustela altaica), կզաքիսազգիների ընտանիքի կաթնասուն կենդանի: Մարմնի երկ.՝ մինչև 31, պոչինը՝ մինչև 15 *սմ*: Ապրում է հիմնականում Ասիայի լեռն. շրջաններում: Ոչնչացնում է մանր կրծողներին:

ՍՈԼՈՆԻՅԻՆ Անատոլի (Օստոն) Ալեքսեևիչ (1934–1982), ռուս. դերասան: ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1981): 1964–ից՝ կինոյում, խաղացել է Ա. Ա. ***Տարկովսկու*** ֆիլմերի գլխ. դերերը («Անդրեյ Ռուբլյով», «Սոլյարիս», «Հայելի», «Ստալկեր»), նկարահանվել է նաև «Կրակի միջով անցում չկա», «Քսանվեց օր Դոստոևսկու կյանքից» և այլ կինոնկարներում:

ՍՈԼՈՎԵՑԿԻ ԿՂԶԻՆԵՐ, կղզեխումբ Սպիտակ ծովում՝ Օնեգայի խորշի մուտքի մոտ: Խոշոր կղզիներն են Սոլովեցկին, Անզերյանը, Մեծ և Փոքր Մուկսալմաները: Տարածքը՝ 347 *կմ*², բարձր.՝ մինչև 107 *մ* (Գողգոթա լ.): Սոլովեցկի կղզում է համանուն վան. համալիրը՝ կրոն. և տնտ. շինություններով:

ՍՈԼՈՎԵՑԿԻ ՄԵՆԱՍՏԱՆ, ճարտ. հուշարձան Սպիտակ ծովի Սոլովեցկի կղզում: Հիմնադրվել է XV դ-ի 20–30-ական թթ-ին: Կառույցներն են սեղանատունը (500 *մ* մակերեսով միասյուն դահլիճ), Ուսպենսկի (Վերափոխման, 1552–57), Պրեոբրաժենսկի (Պայծառակերպության, 1556–64), Բլագովեշչենսկի (Ավետման, 1596–1601) տաճարները, քարաշեն ապարանքներ (1615), ջրաղաց (XVII դ.), զանգակատունը (1777), Նիկոլայի եկեղեցին (1834): Վերաբացվել է 1910-ին: Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՍՈԼՈՎՅԱՆԵՆԿՈ Անատոլի Բորիսովիչ (1932–1999), ուկրաինացի երգիչ (քնարադրամատիկ. տենոր): ԽՍՀՄ ժող. արտիստ (1975), Ուկրաինայի հերոս (2008): 1965–ից՝ Կիևի ՕԲԹ-ի մեներգիչ (Ֆաուստ՝ Շ. Գունոյի «Ֆաուստ», Ռուդոլֆ՝ Ջ. Պուչչինիի «Բոհեմ», ևն): Լենինյան (1980), Տ. Շևչենկոյի անվ. Պետ. (1997) մրց-ներ:

ՍՈԼՈՎՅՈՎ Պավել Ալեքսանդրովիչ (1917–1996), ռուս մեխանիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1981): Սոց. աշխ. հերոս (1966): Աշխ-ները վերաբերում են ավիացիոն շարժիչաշինությանը: Լենինյան (1978), ԽՍՀՄ Պետ. (1988) մրց-ներ:

ՍՈԼՈՎՅՈՎ Սերգեյ Ալեքսանդրովիչ (ծ. 1944), ռուս. կինոռեժ.: ՌԴ ժող. արտիստ (1993): Նկարահանել է «Եգոր Բուլըչովը և ուրիշները» (1971), «Հարյուր օր մանկությունից հետո» (1975), «Փրկարարը» (1980), «Ընտրյալները» (1983), «Ասսա» (1988), «Տուն աստղալից երկնքի տակ» (1992), «Աննա Կարենինա» (2007), «Համադասարանցիներ» (2010) և այլ ֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1977):

ՍՈԼՈՎՅՈՎ Սերգեյ Միխայլովիչ (1820–1879), ռուս պատմաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1872): Վ. Ս. ***Սոլովյովի*** հայրը: Մոսկվայի համալսարանի ռեկտոր (1871–77): Գիտ. դպրոցի հիմնադիր: Աշխ-ները վերաբերում են Նովգորոդի պատմությանը, Պետրոս I-ի և Ալեքսանդր I-ի ժամանակաշրջաններին, Ռուսաստանի արտաքին քաղ-յանը, պատմագրությանը: Հիմն. երկը՝ «Ռուսաստանի պատմությունը հնագույն ժամանակներից» (հ. 1–29, 1851–79):

ՍՈԼՈՎՅՈՎ Վլադիմիր Ալեքսեևիչ (ծ. 1946), ռուս տիեզերագնաց օդաչու, գնդ., ԽՄ հերոս (1984, 1986): Տեխ. գիտ. դ-ր (1995): Կատարել է 2 տիեզ. թռիչք (1984, 1986)՝ 361 օր 22 *ժ* 49 *ր* ընդհ. տևողությամբ, 8 անգամ դուրս է եկել բաց տիեզերք՝ 31 *ժ* 40 *ր* ընդհ. տևողությամբ: ՌԴ Պետ. մրց. (1999):

ՍՈԼՈՎՅՈՎ Վլադիմիր Սերգեևիչ (1853–1900), ռուս կրոն. փիլ., բանաստեղծ, հրապարակախոս: Ս. ունիվերսումի «միասնության» մասին իր ուսմունքում քրիստ. պլատոնականությունը միահյուսել է նորեվրոպ. իդեալիզմի գաղափարների հետ: Ս. 1895–96-ի հայկ. կոտորածներն ըմբռնել է որպես «կրոնաքաղաքական հարց» և Հայկ. հարցի առնչությամբ առաջարկել է քրիստոնյա ազգերի կրոնաքաղ. միասնություն, քարոզել կրոն. հանդուրժողականություն: Հայկ. կոտորածների կապակցությամբ գրել է «Արևելյան հարցը» հոդվածը («Եղբայրական օգնություն Թուրքիայի տառապյալ հայերին», 1897, ժող.):

ՍՈԼՈՎՅՈՎ Վսեվոլոդ Նիկոլաևիչ (1924–2012), հրթիռատիեզ. տեխնիկայի ռուս. կոնստրուկտոր: ՌԳԱ թղթ. անդամ (1990): Սոց. աշխ. հերոս (1980): Աշխ-ները վերաբերում են բարդ տեխ. տրանսպորտ. համալիրների ստեղծման հարցերին: Լենինյան (1972), ԽՍՀՄ Պետ. (1988) մրց-ներ:

ՍՈԼՈՎՅՈՎ–ՍԵԴՈՅ (Սոլովյով) Վասիլի Պավլովիչ (1907–1979), ռուս. կոմպոզիտոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1967): Սոց. աշխ. հերոս (1975): Հեղինակ է «Տարաս Բուլբա» (1940, 2-րդ խմբագրությունը՝ 1955) բալետի, օպերետների («Ամենանվիրականը», 1951, «Օլիմպիական աստղեր», 1962, ևն), երգերի («Սոխակներ», 1944, «Մերձմոսկովյան երեկոներ», 1956, «Եթե ողջ աշխարհի տղաները», 1957, ևն), թատրոնի և կինոյի երաժշտության: ԽՍՀՄ Պետ. (1943, 1947), Լենինյան (1959) մրց-ներ:

ՍՈԼՈՒ (Solow) Ռոբերտ (ծ. 1924), ամերիկացի տնտեսագետ: Աշխ-ները վերաբերում են տնտեսաչափության, տնտ. աճի տեսության հարցերին: Նորելյան մրց. (1987):

ՍՈԼՈՒԽԻՆ Ռեմ Իվանովիչ (1930–1988), բելոռուս ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1968), ԲԽՍՀ ԳԱ ակադ. (1977): Աշխ-ները վերաբերում են հարված. ալիքներին և նրանցում տեղի ունեցող շարժընթացներին: Լենինյան մրց. (1965):

ՍՈԼՍԲԵՐԻ (Salisbury) Ռոբերտ Արթուր Թալբոթ (1830–1903), մարկիզ, Մեծ Բրիտանիայի վարչապետ՝ 1885–92 և 1895–1902-ին: Պահպանողականների առաջնորդ: 1878–80-ին՝ ԱԳ նախարար: Վարել է Օսմ. կայսրության ամբողջական պահպանման քաղ-յուն, բրիտ. շահերն ամրապնդելու նպատակով ***Հայկական հարցն*** օգտագործել է որպես սուլթան. կառ-յան վրա ճնշում գործադրելու միջոց:

ՍՈԼՎԱՏՅՈՒՄ (լատ.՝ solvo – լուծել), լուծիչի մոլ-ների փոխազդեցությունը լուծված նյութի մոլ-ների (իոնների) հետ: Ս-ման արդյունքում առաջացող մոլ. կոմպլեքսները կոչվում են **սոլվատներ**: Ս. ջր. լուծույթներում կոչվում է ***հիդրատացում***:

ՍՈԼՎԵ (Solvay) Էռնեստ Գաստոն (1838–1922), բելգիացի քիմիկոս-տեխնոլոգ և գործարար: Մշակել է կերակրի աղից սոդայի ստացման ամոնիակ. եղանակը (Ս-ի եղանակ), հիմնել է (1863) «Սոլվե» քիմ. ընկ-ը:

ՍՈԼՏԱ (Solta) Գեորգ Ռենատուս (1919–2005), ավստրիացի լեզվաբան: Պատմահամեմատ. լեզվաբ-յան մասնագետ: Հեղինակ է «Հին իտալական տեղանունների ուսումնասիրություն» (1939), «Լատիներենի դիրքի մասին» (1974) և այլ աշխ-ների: «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շարքում» (1960), «Հայոց լեզու» (1963) և այլ աշխ-ներում

անդրադարձել է հայ-ի ծագումնաբանության առնչություններին, քերակ-յանը, քննել հայ-ի բառապաշարի հնդեվրոպ. բառաշերտը:

ՍՈԼՖԵՋԶՈ (իտալ.՝ solfeggio), երաժշտատես. և գործն. առարկա, որը զարգացնում է սովորողների մեղեդիական, հարմոնիկ, բազմաձայն. և տեմբր. լսողությունը, ռիթմի զգացողությունն ու երաժշտ. հիշողությունը: Հայաստանում լսող. կարողության դաստիարակությանն անդրադարձել են միջնադարում (մասնավորապես՝ Ներսես Շնորհալու ժամանակաշրջանում), որի համար օգտագործել են «մանրուսման» ժող-ների որոշ բաժիններ (տես ***Մանրուսում***): Ներկայում գործածում են գիտամեթոդ. ժամանակակից սկզբունքներով կազմված ձեռնարկներ (Ռ. Աթայան, Կ. Բեքարյան, Մ. Տերյան և ուր.):

ՍՈԽ (Allium cepa), շուշանազգիների ընտանիքի երկամյա կամ բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 500 տեսակ (Հս. կիսագնդում), ՀՀ-ում՝ 30՝ գրեթե բոլոր մարզերում: Աշակության մեջ առավել տարածված է գլուխ Ս., կան նաև սնամեջ, պրասասոխ, սոխուկ, սխտոր և այլ տեսակներ: Բանջար. Ս. (սոխուկները և տերևները պարունակում են շաքար, C և B վիտամիններ, եթերայուղ) դեղաբույս է, գեղազարդիչ: Գլուխ Ս-ի բերքատվությունը՝ 400 *գ/հա*: Մննդի մեջ օգտագործում են նաև վայրաճ Ս.: Ս-ի 10 տեսակ պահպանվում է, այդ թվում՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված 4 տեսակ, որոնցից ակակա Ս. Հայկ. լ-աշխարհի բնաշխարհիկ է:

ՍՈԽԱԿՆԵՐ, ***կեռնեխների*** ընտանիքի երգեցիկ թռչունների սեռ: Ապրում են անտառներում, այգիներում, զբոսայգիներում, գերադասում են խոնավ վայրերը: Արուները երգում են մթնշաղին և գիշերը: ՀՀ-ում հայտնի է Ս-ի 5 տեսակ՝ կապտափող, շիկապոչ, սովոր., սպիտակափող, հվ.:

ՍՈԽԻ ՃԱՆՃԵՐ, ծաղկաճանճերի և բզզանների ընտանիքների միջատներ. սոխի և այլ սոխուկավորների վնասատու են: Մնվում են (թրթուրները) սոխուկների հյութալի տերևներով (թեփուկներով):

ՍՈԽՈՒԿ, բույսի տեսակափոխված, սովորաբար՝ ստորգետնյա ընձյուղը՝ կարճ հարթ ցողունով և մսոտ անգույն տերևներով (թեփուկներ), որոնք պաշարում են ջուր և սննդանյութեր: Բնորոշ է սոխուկավորներին և շուշանազգի բույսերին (վարդկակաչ, հակինթ, շուշան):

ՍՈԽՈՒԿԱՎՈՐՆԵՐ, միաշաքիլ բույսերի ընտանիք: Բազմամյա խոտաբույսեր են, մեծ մասը՝ սոխուկավոր: Սոխուկը և տերևները պարունակում են կաթնանման հյութ, բույսի բոլոր մասերը՝ սխտորայուղ, որը նրանց տալիս է առանձնահատուկ համ և հոտ: Հայտնի է 700 տեսակ՝ ամենուրեք (բացի Ավստրալիայից): Պարենն., կեր., գեղազարդիչ բույսեր են, նաև դեղաբույսեր: Շատ տեսակներ պահպանվում են:

ՍՈԿՈՈՒՐԱՄ, ստորգետնյա տաճար Քյոնջու բ-ի (այժմ՝ Հվ. Կորեա) մերձակայքում: Կառուցվել է 742–774-ին (գրանիտ) Թհոհամսեն լ-ան լանջին: Կենտրոնում Բուդդայի, Բոդհիսատվա Գուանի 11-գլխանի և այլ արձաններ են: Պուլհուկսա մենաստանի (VI–VIII դդ.) հետ կազմում է համալիր: Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՍՈԿՈԼՈՎ Բորիս Սերգեևիչ (1914–2013), ռուս երկրաբան և հնէաբան: ՌԴԱ ակադ. (1968): Սոց. աշխ. հերոս (1984): Աշխ-ները վերաբերում են մինչքեմբրյան ժամանակաընթացքում Երկրի օրգ. աշխարհի և կենսոլորտի զարգացման, կենսաշերտագրության գործընթացների հարցերին:

ՍՈԿՈԼՈՎ Սերգեյ Լեոնիդովիչ (1911–2012), ռուս. զորապետ, ԽՍՀՄ մարշալ (1978): ԽՄ հերոս (1980): ՀՄՊ-ի ժամանակ՝ Կարել. ճակատի զրահատանկ. և մեքենայացված զորքերի շտաբի պետ: 1965-ից՝ Լենինգրադի ՋՕ-ի զորքերի հրամ.: 1967-ից՝ ԽՍՀՄ ՊՆ 1-ին տեղակալ, 1984–87-ին՝ նախարար:

ՍՈԿՈԼՈՎ Սերգեյ Յակովլևիչ (1897–1957), ռուս. ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1953): Հայտնագործել է անդրաձայն. մանրադիտակը, ձայնի քվարցային վերլուծիչը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942, 1951):

ՍՈԿՈԼՈՎ Վլադիմիր Եվգենևիչ (1928–1998), ռուս. կենդանաբան: ՌԳԱ ակադ. (1974): Աշխ-ները վերաբերում են ողնաշարավորների էկոլոգ. ձևաբանությանը և կարգաբանությանը, կենսոլորտի, բնության պահպանությանը: Ուսումնասիրել է կաթնասունների մաշկածածկույթները և քիմ. հաղորդակցության հարցերը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1984, 1990):

ՍՈԿՈԼՈՎՍ. Հյուրով Սերգեևնա (1921–2001), ռուս. դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1990): 1945-ից (ընդհատումներով)՝ Մոսկվայի Կինոդերասանի թատրոն-ստուդիայի դերասանուհի: Նկարահանվել է «Պատմություն իսկական մարդու մասին», «Կապրենք մինչև երկուշաբթի», «Բելոռուսական կայարան», «Ես քայլում եմ Մոսկվայով», «Երեսուներեք», «Ճակատագրի հեգնանք կամ Բաղնիքդ անուշ» (հեռուստաֆիլմ), «Բուլվարային սիրավեպ» և այլ կինոնկարներում:

ՍՈԿՈԼՈՎ–ՍԿԱԼՅԱ Պավել Պետրովիչ (1899–1961), ռուս. գեղանկարիչ, գրաֆիկ: ՌԽՖՍՀ ժող. նկարիչ (1956): ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի ակադ. (1949): Հեղինակ է ռոմանտիկ. պաթոսով հագեցած պատմ. մարտանկարների («Թամանյան արշավանք», 1928), պատկերազարդումների, պլակատների: Համայնապատկերի և տրամանկարի վարպետ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942, 1949):

ՍՈԿՈԼՈՎՄԿԻ Վադիմ Վասիլևիչ (1912–1978), ռուս. մեխանիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1946): Աշխ-ները վերաբերում են պլաստիկության տեսությանը, սորուն միջավայրի ստատիկային, թաղանթների տեսությանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943, 1952):

ՍՈԿՈԼՈՎՄԿԻ Վասիլի Դանիլովիչ (1897–1968), ռուս. զորապետ, ԽՍՀՄ մարշալ (1946): ԽՄ հերոս (1945): ՀՄՊ-ի ժամանակ՝ մի շարք ճակատների շտաբի պետ, Արմ. ճակատի զորքերի հրամ. (1943–44) և 1-ին Բելոռուս. ճակատի հրամ-ի տեղակալ: 1946–49-ին՝ Գերմանիայում խորհրդ. զորախմբի գլխ. հրամ., 1949-ից՝ ԽՍՀՄ ՋՈՒ ռազմ. նախարարի 1-ին տեղակալ, 1952–60-ին՝ ԳՇ պետ՝ ԽՍՀՄ պաշտպ-յան նախարարի 1-ին տեղակալ:

ՍՈԿՈԼՄԿԻ Գրիգորի Իվանովիչ (1807–1886), ռուս. թերապևտ: Ժ. Բ. ***Բույոյից*** անկախ նկարագրել է սրտի ռևմատիկ ախտահարումը: Նպաստել է լսման (աուսկուլտացիա) և ընդրախման (պերկուսիա) ներդրմանը գործն. բժշկության մեջ:

ՍՈԿՈՏՐԱ, (Sokotra), կղզեխումբ Հնդ. օվկ-ում՝ Գվարդաֆույ հրվանդանից արլ. (Եմեն): Տարածքը՝ 3,6 հզ. *կմ*²: Ամենախոշոր կղզին Սոկոտրան է (բարձր.՝ 1503 *մ*): Ծածկված է կիսաանապատ. բուսականությամբ:

ՍՈԿՈՐ Մաթեյ Էմանոիլի (1908–1980), ռումինահայ կոմպոզիտոր, դիրիժոր: Ռումինահայի ԳԱ թղթ. անդամ (1952): Ռումինիայի արվ. վաստ. գործիչ (1951): Հեղինակ է Ռումինիայի պետ. հիմնի երաժշտության (կատարվել է 1953–77-ին), «Պարոն Լեոնիդա» (1978) օպերայի, մենակատարների, երգչախմբի և նվագախմբի համար՝ «Մայր» (1949), «Խաղաղության երգը» (1960) պոեմների, «Բորզնեշտի կաղնին» օրատորիայի (1966), նվագախմբային պարերի, ռապսոդիայի, կոնցերտների (1939), կամեր-գործիք. անսամբլների, խմբերգերի, երգերի ևն: Ռումինիայի Պետ. մրց. (1951):

ՍՈԿՐԱՏ ՍՔՈԼԱՍՏԻԿՈՍ (380–440), բյուզանդացի պատմիչ: Հեղինակ է «Եկեղեցական պատմություն» (7 գիրք) երկի, որը վաղ միջնադարում թարգմանվել է հայ. (հրտ.՝ 1897): Հիմնականում բովանդակում է 306–436-ի եկեղեց. իրադարձությունները: Մեզ է հասել ընդարձակ («Մեծ Սոկրատ») և համառոտ («Փոքր Սոկրատ») խմբագրությամբ: Վերջինը (պարունակում է նաև միաբնակության գաղափարներ բովանդակող հավելումներ) Հայ եկեղեցու ծրագր. գործերից էր, լայնորեն տարածվել է Հայաստանում:

ՍՈԿՐԱՏԵՍ (մ. թ. ա. մոտ 470–399), հույն փիլ., դիալեկտիկայի՝ որպես ուղղորդող հարցերի առաջադրման միջոցով ճշմարտության բացահայտման մեթոդի (սոկրատեսյան) հիմնադիրներից (տես ***Մանտիկա***): Մեղադրվել է նոր աստվածությունների երկրպագելու և երիտասարդներին այլասերելու մեջ, դատապարտվել մահվան (մահապատժի համաձայն՝ խմել է մի գավաթ թույն): Ըստ Ս-ի՝ փիլ-յան նպատակն ինքնաճանաչողությունն է՝ որպես բարիքի ձեռքբերման ուղի, առաքինությունը՝ գիտելիքը կամ իմաստությունը: Ս. իր ուսմունքը շարադրել է բանավոր, գլխ. աղբյուրները նրա աշակերտներ ***Քսենոփոնեսի*** և ***Պլատոնի*** աշխ-ներն են: Ս. իմաստության իդեալի մարմնացումն է:

ՍՈԿՐԱՏԵՍՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ, հինհուն. փիլ. դպրոցներ, որոնք ստեղծել են ***Սոկրատեսի*** աշակերտները և հետևորդները մ. թ. ա. IV դ-ում (պլատոնյան ակադ., մագարյան, էլիդաէրետրիական, կիրենյան դպրոցներ, կինիկներ):

ՍՈՀԵՄՈՍ (ըստ Սիմեսես Խորենացու՝ Տիգրան Վերջին), Հայոց թագավոր՝ 144–161 և 164–186-ին: ***Կոմմագենեի*** Երվանդունիների արքայատան ներկայացուցիչ: Եղել է Ասորիքի Եմեսա ք-ի թագավոր: Հայոց գահը ստացել է Հռոմի կայսր Անտոնինոս Պիոսից: Ս-ի գահակալումը համարելով 64-ի Հռանդեայի պայմանագրի խախտում՝ պարթև. զորքը մտել է Հայաստան, տապալել Ս-ին և գահ բարձրացրել Բակուր Արշակունուն: 163-ին հռոմ. բանակն ավերել է Արտաշատը և ձերբակալել Բակուրին: 164-ին Հայոց գահը կրկին հանձնվել է Ս-ին, որը մայրաքաղաք է հռչակել Վաղարշապատը: Ս-ի օրոք կառուցվել են Վաղարշապատի միջնաբերդը, պաշտպ. ամրությունները, պալատ. համալիրը ևն:

ՍՈՂԱՆՔՆԵՐ, **սողքեր,** ծանրության ուժի ազդեցությամբ լ-լանջերով կամ թեք տեղանքով ապարների զանգված. սահաշարժեր, որոնք, լվացման հետևանքով, ապարների հավասարակ-

շության խախտման արդյունք են: Սողանք. շարժընթացներն ուղղակիորեն կախված են տեղանքի կառուցվածքից, ապարների շերտերի տեղաբաշխումից, ստորերկրյա ջրերի ակտիվությունից, անտառածածկույթի կամ խոտածածկույթի խտությունից, գերխոնավացումից, ստորերկրյա ցնցումներից, մարդու անզգույշ տնտ. գործունեության, երկրբ. և երկրաձևաբան. պայմանների առանձնահատկությունների անտեսումից: ՀՀ-ում կան 2000-ից ավելի խոշոր Ս. (մոտ՝ 500 *կմ*^{2} տարածք), որոնցից շատերը բնակավայրերի (Դիլիջան, Իջևան, Կապան, Վանաձոր ևն) սահմաններում են, միջին բարձրության լեռնային գոտում՝ Ախուրյանի հովտում (Գյումրուց հս-արմ.), Դերեդի, Աղստևի, Վեդիի, Գետիկի, Որոտանի ավազաններում, Նուբարաշենի, Ձերմուկի սարավանդներում ևն:

ՍՈՂԴԻԱՆԱ, **Սողդ**, պատմ. մարզ Միջին Ասիայում՝ Զարավշան և Կաշկադարյա գետերի ավազանում, քաղաքակրթության հին կենտրոններից: Նույնանուն պետության տարածքը՝ մ. թ. ա. I հզ-ամյակի կեսերին: Գլխ. քաղաքը՝ Մարականդա:

ՍՈՂՈՄՈՆ (եբր.՝ Շելոմո – «Խաղաղասեր») **Իմաստուն** (մ. թ. ա. մոտ 975–928), Հրեաստանի (Իսրայել-Հուդայի) թագավոր՝ մ. թ. ա. մոտ 950-ից: *Դավիթ* թագավորի որդին, գահակիցը (մ. թ. ա. 967-ից) և հաջորդը: Երուսաղեմում կառուցել է Եհովայի հռչակավոր տաճարը (հայտնի է նաև «Ս-ի տաճար» անունով): Պետության միջազգ. դիրքն ամրապնդելու համար բազմիցս ամուսնացել է հայտնի հարստությունների դուստրերի հետ (ունեցել է 700 կին, 300 հարճ), շահավետ առևտր. պայմանագիր է կնքել Փյունիկիայի Տյուրոս ք-ի, Եգիպտոսի, Արաբիայի և Մերձ. Արևելքի մի շարք երկրների հետ: Աստվածաշնչում Ս. ներկայացվում է արտակարգ իմաստուն, արդար դատավոր, համարվում է աստվածաշնչ. մի շարք գրքերի հեղինակ («Առակք Սողոմոնի», «Երգ երգոց», «Իմաստություն Սողոմոնի», «Սաղմոսք Սողոմոնի» ևն):

ՍՈՂՈՄՈՆ I (1735–1784), Իմերեթիայի թագավոր՝ 1752-ից: Հաջող պայքար է մղել Օսմ. կայսրության դեմ: Արգելել է գերեվաճառությունը:

ՍՈՂՈՄՈՆ Ա ԳԱՌՆԵՑԻ (ծ. թ. անհտ–792), Հայոց կաթողիկոս՝ 791-ից: Եղել է Ձավախքի Զրեսկ վանքի վանահայր: Աղվանից կաթողիկոս Միքայելի (707–744) հրավերով գլխավորել է Շամքորի եկեղեց. ժողովը (740), որը մերժել է արյունակիցների միջև ամուսնությունը:

ՍՈՂՈՄՈՆ ՄԱՔԵՆԱՑԻ, VIII դ-ի մատենագիր, մանկավարժ: Եղել է *Սևքենյաց վանքի* առաջնորդ: Հիմնադրել է դպրոց, որը մեծ հռչակ է վայելել (գոյատևել է գրեթե մեկ դար, սովորել են Ստեփանոս Սյունեցին, Սողոմոն Ա Գառնեցին): Մասնակցել է 726-ի Մանազկերտի եկեղեց. ժողովին, 740-ին՝ Աղվանից կաթողիկոսի հրավիրած Շամքորի ժողովին, Վրաց կաթողիկոսին ուղղված նախատինքի թղթի կազմմանը: 747-ին կազմել է Տոնական ծիս. ժող. (տես *Հաղորդիք*): Ս. Մ. խմբագրել է Մեսրոպ Մաշտոցին նվիրված «Փոքր Կորյունը» պատմագիրքը, Վահան Գողթնացու վարքի 2-րդ տարբերակը: 740-ական թթ-ին որոշ տարաձայնությունների պատճառով Ս. Մ. իր համակիրների հետ տեղափոխվել է Ձավախքի Զրեսկ վանք, հիմնադրել նոր միաբանություն: Մահացել է Զրեսկում, հետագայում աճյունը տեղափոխել են Մաքենիս:

ՍՈՂՈՄՈՆԻ ԿՂԶԻՆԵՐ (Solomon Islands), հրաբխ. կղզեխումբ Խաղաղ օվկ-ում՝ Նոր Գվինեայից արլ.: Հս-արմ. մասը մտնում է Պապուա Նոր Գվինեա պետության տարածքի մեջ, մնացածն զբաղեցնում է *Սողոմոնի Կղզիներ* պետությունը: Տարածքը՝ 40,4 հզ. *կմ*^{2}: Խոշոր կղզիներն են Բուգենվիլը, Գուադալկանալը, Սանտա Իսաբելը, Մալաիտան, Սան Քրիստոբալը, Նյու Ջորջիան, Շուազյոլը: Բարձր.՝ 2743 *մ* (Բուգենվիլ կղզում): Կան գործող հրաբուխներ: Ծածկված է մշտադալար արևադարձ. անտառներով:

ՍՈՂՈՄՈՆԻ ԿՂԶԻՆԵՐ, պետություն Խաղաղ օվկ-ի հվ-արմ-ում՝ Մելանեզիայում: Տարածքը՝ 28,9 հզ. *կմ*^{2}, բն.՝ 530 հզ. (2012): Մայրաքաղաքը՝ Հոնիարա: Պետ. լեզուն՝ անգլ.: Կառավարման ձևը՝ միապետ.: Պետության գլուխը Մեծ Բրիտանիայի թագուհին է՝ ներկայացված գեն-նահանգապետով: Բաժանված է 9 վարչ. պրովինցիաների և մայրաքաղաք. տարածքի: Հավատացյալները հիմնականում քրիստոնյա են: Անդամակցում է ՄԱԿ-ին, Բրիտ. համագործակցությանը: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 2,6 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է փայտանյութ, կակաո, արմավի յուղ, կոկոս, ձուկ, կոպրա, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, դեղամիջոցներ, տրանսպորտ. միջոցներ, սննդամթերք: Դրամ. միավորը՝ Սողոմոնի Կղզիների դոլար:

Կղզիները հայտնագործել են եվրոպացիները XVI դ-ում: 1890-ական թթ-ից Մեծ Բրիտանիայի տիրույթ է: 1978-ից անկախ պետություն է: 1990-ական թթ-ի վերջերից սկսվել է սուր ներքաղ. ճգնաժամ՝ կապված միջցեղ. հակասությունների հետ: 2003-ին երկիր են մտցվել ավստրալ., նորզելանդ. և Օվկիանիայի որոշ երկրների ռազմ. և ոստիկան. ուժեր:

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ Արթուր Հակոբի (1914–1983), մեխանիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր: ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1974): Եղել է ՄՊՀ Մեխանիկայի ԳՀԻ փոխտնօրեն (1947–52):

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ Կոլյա Համազասպի (ծ. 1947), ճարտարագետ-մեխանիկոս: Տեխ. գիտ. դ-ր (1991), պրոֆ. (1993): Աշխ-ները վերաբերում են կիրառ. երկրչփ-յանը, բազմաչափ տարածությունների մոդելավորմանը, համակարգչ. գրաֆիկային:

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ Սարգարիտ Սամիկոնի (1921–1981), ճարտ.: ՀԽՍՀ վաստ. ճարտ. (1970): Հեղինակ է Երևանում՝ Ֆիզիկայի ինստ-ի համալիրի հյուրանոցի (1960), առանձնատների (1961), նիստերի դահլիճի շենքի (1962–1963), Ձերմուկում՝ կապի բաժանմունքի շենքի նախագծերի:

Կին ճարտ-ների համամիութ. ստուգատեսի դափնեկիր (1948):

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ Մկրտիչ, **Կառնենցի** (1854–1915), ազգ-ազատագր. պայքարի մարտիկ, ֆիդայի: 1890-ականների սկզբին գործակցել է *Հրայրի* հետ, 1899-ին (Անդրանիկի խմբում) վրեժ է լուծել *Աղբյուր Սերոբին* սպանողներից: Զոհվել է ծննդավայրի (գ. Կառնեն, Սուշի գվռ) պաշտպ-յան ժամանակ:

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ Սողոմոն Ալեքսանդրի (1907–1978), գրականագետ, խմբ.: Բանասիր. գիտ. դ-ր (1966), պրոֆ. (1967): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1967): 1946–47 և 1952–54-ին՝ «Սովետական գրականություն և արվեստ» (1988-ից՝ *«Նորք»*) ամսագրի գլխ. խմբ.: Հեղինակ է «Եվրոպական գրականության ուրվագծեր (Բոկաչչո, Շիլլեր, Հյուգո)» (1954), «Արդի հայ պոեզիայի մի քանի հարցեր» (1960), «Ժամանակակից հայ բանաստեղծներ» (գիրք 1, 2, 1965, 1967), «Դանթե, Պետրարկա, Շեքսպիր, Մոլիեր (եվրոպական ռեալիզմի պատմությունից)» (1973), «Լեսինգ, Գյոթե, Հայնե (եվրոպական ռեալիզմի պատմությունից)» (1978) և այլ աշխ-ների:

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ Վան Մարտինի (ծ. 1937), նկարիչ, խեցեգործ: Նոնա *Գաբրիելյանի* ամուսինը: Ստեղծել է գեղանկարչ. («Միրաժ», 1999, «Խորհրդավոր ընթրիք», 2001, ևն), խեցեգործ. («Ռեքվիեմ», 1976, «Ժամանակ», 1999, երկուսն էլ՝ հրակավ), գրաֆիկ. («Մարդը և Տիեզերքը», 1985–88, նկարաշար) գործեր, նաև Մեծ եղեռնին նվիրված հուշարձան (1980, Խարտում, Սուդան) ևն: 1992-ից՝ Գերմանիայում:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2014):

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ Վիկտոր Էռնեստի (ծ. 1979), քաղաքագետ, լրագրող: Բանասիր. գիտ. թեկնածու (2004), քաղ. գիտ. դ-ր (2014): Հիմն. աշխ-ը՝ «Իշխանության հանրայնությունը. Օնթոլոգիա, մեխանիզմներ, հայեցակարգեր» (2012):

ՍՈՂՈՄՈՆՈՎ Յուրի Վահանի (1930–2010), փիլ.: Փիլ. գիտ. դ-ր, պրոֆ. (1992): Աշխ-ները վերաբերում են բարոյադաստիարակչ. գործունեության կառավարման տեսությանը, ձեռնարկատիր. բարոյականությանը: ՌԽՆԳԱ անդամ (1996):

ՍՈՂՈՅԱՆ Սպարտակ Սերյոժայի (ծ. 1960), մանկավարժ: Մանկավարժ. գիտ. դ-ր (2008), պրոֆ. (2015): 2012-ից՝ ԳՊՄՀ-ի (2016-ից՝ Շիրակի պետ. համալսարան) պրոռեկտոր: Աշխ-ները վերաբերում են դպրոցում տեղեկագիտ-յան դասավանդման մեթոդիկային, գրաֆների տեսությանը:

ՍՈՂՈՅԱՆ Ֆրիդրիխ Մկրտչի, **Ֆրիդ** (ծ. 1936), քանդ.: ՀՀ (2017), ՌԴ (2004), Ուկրաինայի (2011) ժող.նկարիչ: Ուկր. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1984): Ստեղծել է դիմաքանդակներ («Արթիկցի քարհատ բանվոր», 1970, «Կնոջս դիմաքանդակը», 1971), ՀՄՊ-ում (1941–45) զոհված մարտիկների բազմաթիվ հուշարձաններ ՀՀ-ում, ԼՂՀ-ում և այլուր, «Արարողը» (1969) քանդակը, «Դնեպրի ազատագրումը» կոմպոզիցիան (1981, բրոնզ), «Խաչ միացյալ» հուշարձանը (1997, Մոսկվա), Ն. Ռիժկովի կիսանդրին (1998, Սպիտակ) ևն:

Լենինյան մրց. (1984), ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2011):

ՍՈՂՈՒՆՆԵՐ, **ռեպտիլիաներ** (Reptilia), թիկնալարավորների տիպի կենդանիների դաս: Բնորոշ է խառն արյան շրջանառությունը: Շնչում են թոքերով: Սարմնի ջերմաստիճանն անկայուն է, մեծ մասի մաշկը ծածկված է եղջրային թեփուկներով կամ վահանիկներով: Ժամանակակից Ս-ի շարքն են դասվում կրիաները, կոկորդիլոսները, կտցագլուխները (հատերիա) և թեփուկավորները (մողեսներ, ամֆիսբեններ և օձեր): Հայտնի է 8240 տեսակ՝ հիմնականում շոգ և տաք գոտիներում: Մեծ մասն ապրում է ցամաքում, որոշ Ս.՝ ծովերում: Մսվում են հիմնականում կենդ. կերով: Ձվադրում են, որոշ տեսակներ ձվակենդանածին են և կեն-

դանաձին: Որոշ U-ի միսն ու ձուն օգտագործում են սննդի մեջ: Օձերի, մողեսների և կոկորդիլոսների կաշվից պատրաստում են տարբեր ապրանքներ: Մի շարք տեսակների (հատկապես՝ կրիաների, օձերի և կոկորդիլոսների) թվաքանակը խիստ նվազել է: Մոտ 150 տեսակ և ենթատեսակ գրանցված են ԲՊՄՄ Կարմիր գրքում: Առավել հնագույն U. ի հայտ են եկել միջին կարբոնում, մեզոզոյում հասել են մեծ բազմազանության (դինոզավրեր, պտերոզավրեր ևն), մեզոզոյի վերջին շատ խմբեր լրիվ անհետացել են: U-ի ուսումնասիրությամբ զբաղվում է սողունաբանությունը (հերպետոլոգիա):

ՍՈՃԻ (Pinus), **շամի**, սոճազգիների ընտանիքի մշտադալար ասեղնատերև ծառերի, հազվադեպ՝ փռված թփերի ցեղ: Հայտնի է մոտ 100 տեսակ (հիմնականում՝ Հս. կիսագնդի բարեխառն գոտում), ՀՀ-ում՝ 1՝ 1000–1800 *մ* բարձր-ներում: Անտառաոջացնող հիմն. ցեղերից է: Փայտանյութից ստանում են խեժեր, բևեկնախեժ, եթերայուղեր, բևեկնայուղ ևն, ասեղնատերևներից՝ C վիտամին: Որոշ տեսակներ պահպանվում են:

ՍՈՃՈՒ ԲՎԻԿ, *բվիկների* ընտանիքի թիթեռ: Սոճու վնասատու է: Առջևի թևերը մոխրադարչնագույն են, դարչնագույն, կարմրադարչնագույն՝ մուգ շերտերով, հետինները՝ մոխրագորշագույն: Մսվում է (թրթուրները) ասեղնատերևներով, բողբոջներով, մատղաշ շիվերով:

ՍՈՃՈՒ ԵՐԿԱՐԱՉԱՓ, *երկրաչափների* ընտանիքի թիթեռ: Սոճու վնասատու է: Թևերը մուգ դարչնագույն են կամ շիկավուն շերտերով: Մսվում է (թրթուրները) ասեղնատերևներով:

ՍՈՄԱ (սանսկրիտ), թմրեցնող սրբազան ըմպելիք հինդ. կրոնում և դից-յան մեջ, որը կարևոր դեր է ունեցել զոհաբերությունների ծեսերում: Համապատասխանում է հին իրան. հաոմային:

ՍՈՄԱԼԻ, թ-կղզի Աֆրիկայում: Տարածքը՝ 750 հզ. *կմ*²: Մակերևույթի մեծ մասի բարձր.՝ 500–1500 *մ* (առվ՝ 2436 *մ*): Տիրապետում են չոր սավաննաները, անապատ., կիսաանապատ. բուսականությունը: Տարածքում են Սոմալի, Ջիբութիի պետությունները և Եթովպիայի մի մասը:

ՍՈՄԱԼԻ (Soomaaliya), **Սոմալիի Հանրապետություն** (Jamhuuriyadda Soomaaliya), պետություն Արլ. Աֆրիկայի հս-արլ-ում՝ համանուն թ-կղզում: Սահմանակից է Ջիբութիին, Քենիային և Եթովպիային: Տարածքը՝ 637 հզ. *կմ*², բն.՝ 9,8 մլն (2009): Մայրաքաղաքը՝ *Մոգադիշո*: Պետ. լեզուները՝ սոմալի և արաբ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Հավատացյալների մեծ մասը մահմեդական է: Բաժանված է 18 վարչ. մարզերի: Անդամակցում է ՄԱԿ-ին, Աֆրիկ. միությանը: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 600 ԱՄՆ դոլար է (2005): Արտահանում է խեկ-ներ, բանան, ձուկ, կաշի, փայտածուխ, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ սոմալ. շիլինգ:

U-ի տարածքում դեռևս մեր թվականության սկզբին եղել են խոշոր բնակավայրեր, որոնց բնակչությունն առևտուր է արել արաբների, հույների, հնդիկների հետ: VII–VIII դդ-ում թ-կղզում հաստատվել են արաբները, որոնք էական ազդեցություն են թողել U-ի բնակչության կրոնի, լեզվի, մշակույթի ձևավորման վրա, XII–XIX դդ-ում ստեղծել են սուլթանություններ: XIX դ-ից սկսվել է եվրոպ. տերությունների պայքարը U-ի թ-կղզու համար, և XX դ-ի սկզբին այն բաժանվել է 3 գաղութի՝ Բրիտ. Սոմալիլենդ, Ֆրանս. U-ի Ափ և Իտալ. U.: ԵՀՊ-ից հետո պայքար է ծավալվել երկրի անկախության և վերամիավորման համար: 1960-ի հունիսի 26-ին անկախացել է Բրիտ. Սոմալիլենդը, հուլիսի 1-ին այն և Իտալ. U. միավորվել են անկախ U-ի Հանրապետության մեջ: Ֆրանս. U. 1977-ին դարձել է անկախ պետություն՝ Ջիբութի: 1969-ի ռազմ. հեղաշրջումից հետո իշխանությունն անցել է բանակի սպաներին՝ Մ. U. Բառեի գլխավորությամբ: Ցեղակլան. հակասությունների հետևանքով կառավարող ռեժիմը 1991-ին կորցրել է իշխանությունը, սկսվել է զինված միջկլան. հակամարտություն՝ փաստացի հանգեցնելով պետության փլուզմանը: 1992-ին երկիր են մտցվել ՄԱԿ-ի խաղաղապահ ուժեր (դուրս են բերվել 1995-ին), որոնց, սակայն, չի հաջողվել հաստատել կարգ ու կանոն: 2006–09-ին հակամարտությանը միջամտել է Եթովպիան: U-ի իշխանությունն Աֆրիկ. միության ուժերի աջակցությամբ վերահսկում է երկրի տարածքի աննշան մասը միայն: Շրջանների մեծ մասում իշխանությունը պատկանում է զինված մահմեդ. արմատ. «աշ-Շաաբ» խմբավորմանը: Երկարատև ներքաղ. ճգնաժամի և աղետալի տնտ. իրավիճակի պայմաններում հսկայական չափերի են հասել մաքսանենգ առևտուրը և ծովահենությունը, որը դարձել է բնակչության մի մասի համար եկամտի գլխ. աղբյուրը:

ՍՈՄԱԼԻ, սոմալի ժողդ-ի լեզուն, Սոմալիի պետ. լեզուն: Պատկանում է քամյան ընտանիքի քուշյան ճյուղին: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՍՈՄԱԼՅԱՆ Սուքիաս (1776–1846), բանաստեր, բառարանագիր: Վնտ ՄՄ՝ անդամ, արք. (1826): Հիմնադրել է *Սամվել Մուրադյան վարժարանը*: Հեղինակ է «Յուցակ թարգմանությանց նախնյաց» (1825), «Պատկեր հայկական դպրության» (երկուսն էլ՝ իտալ., 1829) աշխ-ների: Կազմել է «Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք» (1838, «Մատենագրությունք նախնյաց» մատենաշարով) մատենագիտ. ժող-ը (համահեղ.՝ Ն. Սարգիսյան), գործն. նշանակության 5 բառարան (1835, 1843)՝ հայ., անգլ. և տաճկերեն բառանյութի ընդգրկումով:

ՍՈՄԱԼԻՆԵՐ, **սոմալեցիներ**, քուշական ժողդ, Սոմալի պետության հիմն. բնակչությունը (9,1 մլն, 2010): Ապրում են նաև Արլ. Եթովպիայում (4,6 մլն, 2007), Քենիայում (600 հզ.), Եմենում, Ջիբութիում ևն: Ընդհ. թիվը՝ 15–17 մլն (2016): Լեզուն՝ սոմալի: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են:

ՍՈՄԱՏԻԿ ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ (հուն.՝ soma – մարմին), մարդու և կենդանիների նյարդ. համակարգի բաժին. զգացող (աֆերենտ) և շարժիչ (էֆերենտ) նյարդաթելերի ամբողջություն, որը նյարդավորում է մկանները (ողնաշարավորների՝ կմախքային), մաշկը, հոդերը:

ՍՈՄԱՏՈԼՈԳԻԱ (< հուն. soma, սեռ. հոլ.՝ somatos – մարմին և ...*լոգիա*), մարդու ձևաբանության ճյուղ. ուսումնասիրում է մարմնի և նրա մասերի չափերի և ձևերի տարատեսակությունները: Ընդգրկում է մարմնակազմվածքի տիպերը, մարմնի, օրգանների համամասնությունը և մարմնաչափությունը՝ մարմնի և նրա մասերի, զանգվածի չափումները:

ՍՈՄԲԱԹՀԵՅ (Szombathely), ք. Հունգարիայի արմ-ում, Վաշ մեդիեի վարչ. կենտրոնը: Բն.՝ 80 հզ. (2010): Գործում է «Սավարիա» թանգարանը: Հիմնել են հռոմեացիները՝ Սավարիա անվանումով (II–III դդ.): Պատմ. ճարտ. հուշարձաններից են Սբ Կվիրինուսան (IV դ.), բարոկկո ոճի Եպիսկոպոսի պալատը և սեմինարիան (երկուսն էլ՝ XVIII դ.):

ՍՈՄԵՐՍԵԹ (Somerset), կոզի Կանադ. կոզեխմբում: Տարածքը՝ 24,3 հզ. *կմ*², բարձր.՝ մինչև 762 *մ*: Հիմն. բնակավայրը՝ Ֆորտ Ռոս:

ՍՈՄԵՐՖԵԼԴ (Sommerfelt) Ալֆ (1892–1965), նորվեգացի լեզվաբան: Նորվեգիայի ԳԱ ակադ. (1922): Հեղինակ է կելտագիտությանը, ընդհ. լեզվաբ-յանը, հնդեվրոպաբանությանը վերաբերող աշխ-ների:

ՍՈՄՄ (Somme), գետ Ֆրանսիայի հս-ում: Երկ.՝ 245 *կմ*, ավազանը՝ 5,5 հզ. *կմ*², ջրի միջին ծախսը՝ 45 *մ*³/*վ*: Թափվում է Լա Մանշ նեղուցը: Նավարկելի է: Ջրանցքներով կապված է Ուազայի և Շելիդայի հետ: ԱՀՊ-ի ժամանակ (01.07–08.11. 1916) անգլո-ֆրանս. զորքերը U-ում անհաջող փորձեր են արել ճեղքելու գերմ. 2-րդ բանակի դիրքերը, 2 կողմերը կորցրել են ավելի քան 1,3 մլն մարդ: Սեպտ. 15-ին անգլ. բանակը 1-ին անգամ կիրառել է տանկեր:

ՍՈՄՈՍԱ, (Somoza) Անաստասիո (1896–1956), Նիկարագուայի նախագահ՝ 1936–1947, 1950–56-ին, փաստացի՝ բռնապետ: Սպանվել է:

ՍՈՄՈՍԱ ԴԵԲԱՅԼԵ (Somoza Debayle) Անաստասիո (1925–1980), Նիկարագուայի նախագահ՝ 1967–72, 1974–79-ին: Շարունակել է հոր՝ Ա. *Սոմոսայի* բռնապետ. քաղ-յունը, 1979-ի հուլիսին տապալվել է, հեռակա դատապարտվել է մահապատժի: Սպանվել է Պարագվայում:

ՍՈՄՈՎ, Անդրեյ Իվանովիչ (1830–1909), արվ-ի ռուս. պատմաբան: Հեղինակ է Կ. Պ. Բրյուլովի, Պ. Ա. Ֆեդոտովի մասին մենագրությունների, Էրմիտաժի նկարների կատալոգի (1889–95): Որդին՝ **Կոնստանտին Անդրեևիչ U.** (1869–1939), նկարիչ, գրաֆիկ: Ստեղծել է երգիծ. ոճավորումով պատկերներ XVIII դ-ի ազնվականների կենցաղից («Երեկո», 1900–02), արտահայտիչ դիմանկարներ («Ա.. Ա. Բլոկ», 1907), բնանկարներ, պատկերազարդումներ («Մարքիզուհու գիրքը», Ֆ. ֆոն Բլեյ և U., հրտ.՝ 1908 և 1918): Նրա Ն. Գ. Վիսոցկայայի դիմանկարը և այլ գործեր ՀԱՊ-ում են:

ՍՈՄՈՎ Միխայիլ Միխայլովիչ (1908–1973), ռուս օվկիանոսագետ, բևեռախույզ: ԽՄ հերոս (1951): Ղեկավարել է ջոկատներ՝ Կենտր. Արկտիկայի օդ. հետազոտման ժամանակ, «Հյուսիսային բևեռ-2» դրեյֆող կայանի (1950–51), խորհրդ. 1-ին արկտիկ. արշավախմբի (1955–57) աշխ-ները: Լոմոնոսովի ստորջրյա լ-շղթայի 1-ին հայտնագործողներից է (1948): Աշխ-ները վերաբերում են բևեռ. ծովերի սառց. ռեժիմի հարցերին:

ՍՈՅԱ (Glycin), բակլազգիների ընտանիքի խոտաբույսերի ցեղ: Հացահատիկ. ընդհ-վոր և ձիթատու մշակաբույս է: Հայտնի

է 10 տեսակ, մշակության մեջ՝ 1: ՀՀ-ում մշակվել է խառը ցանքերում:

ՍՈՅՄՈՆՈՎ, Ֆեոդոր Իվանովիչ (1692–1780), ռուս առաջին ջրագիրը: 1719–26-ին նկարագրել է Կասպից ծովի ողջ ափամերձ հատվածը: Ուսումնասիրել է Սիբիրը, 1757–63-ին եղել է Սիբիրի նահանգապետ: 1731-ին հրապարակել է Կասպից ծովի ատլասը՝ տեքստով, 1738–39-ին՝ Բալթիկ ծովի ատլասը: Աշխ-ները վերաբերում են Սիբիրի տնտ-յանն ու աշխարհագրությանը, աստղագիտ-յանը ևն:

«ՍՈՅՈՒԶ», երկրամերձ ուղեծրով թռիչքների բազմատեղ տիեզերանավեր, ստեղծվել են ԽՍՀՄ-ում: 1967–81-ին ուղեծիր է դուրս բերվել 40 «Ս.», 2-ը՝ անօդաչու: «Ս.»-ի հիմքի վրա մշակվել են «Սոյուզ-S» (1979–86) և «Սոյուզ-SU» (1986–2002) տիեզերանավերը՝ անձնակազմերն ուղեծր. կայան հասցնելու և Երկիր վերադարձնելու համար: 2002-ից արձակվում են «Սոյուզ-ՏՄԱ» տիեզերանավերը:

«ՍՈՅՈՒԶ–ԱՊՈԼՈՆ», հայտնի է նաև որպես «ձեռքսեղմում տիեզերքում», խորհրդ. «Սոյուզ-19» և ամերիկ. «Ապոլոն» տիեզերանավերի համատեղ փորձն. թռիչքը: Իրականացվել է 1975-ի հուլիսի 15-ին:

ՍՈՆ (Saône), 1. գետ Ֆրանսիայի արմ-ում, Ռոնի աջ վտակը: Երկ.՝ 482 *կմ*, ավազանը՝ 30 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 400 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է: Ջրանցքներով միացած է Մոզել, Լուար, Մառն, Մեն, Հռենոս գետերին: Գետաբերանին է Լիոն ք.:

2. Գետ Հնդկաստանում, Գանգեսի աջ վտակը: Երկ.՝ 780 *կմ*, ավազանը՝ 65,5 հզ. *կմ*^{2}, ջրի ծախսը՝ 1400 *մ*^{3}/*վ*:

ՍՈՆԱ ՎԱՆ (Տեր-Հովհաննիսյան Սոնա Անուշավանի, ծ. 1952), բանաստեղծուհի, հրտ-խմբ.: 1996–97-ին՝ «Եղիցի լոյս» (Լոս Անջելես) հանդեսի հրտ-խմբ., 2005-ին՝ *«Նարցիս»* ամսագրի հիմնադիր: Հեղինակ է «Փշրանքներ» (1996), «Ես անուն չունեմ» (2003), «Ես ձայն եմ լսում» (2006), «Լիիրեռոո անապատի համար» (2015) և բանաստեղծությունների այլ ժող-ների:

ՍՈՆԱՏ (իտալ.՝ sonata, < sonare – հնչել), կամեր-գործիք. ստեղծագործություն, գործիք. երաժշտության ժանր: Մեկ կամ մի քանի գործիքների համար Ս. (առավելապես՝ 3-մասանի ցիկլ) սկզբնավորվել է Կ. Ֆ. Է. Բախի և Դ. *Սկառլատիի*, վերջնականապես ձևավորվել՝ *Վիեննական դասական դպրոցի* կոմպոզիտորների գործերում: Ժանրի զարգացմանը նպաստել են Ֆ. Շոպենը, Ռ. Շումանը, Ֆ. Լիստը, Յ. Բրամսը, Է. Գրիգը և ուր.: Հայտնի են նաև միամաս Ս-ները: Երբեմն Ս-ին տրվում են ծրագր. անվանումներ (Լ. վան Բեթհովենի «Պաթետիկական», «Ավրորա» Ս-ները):

ՍՈՆԳ ԿՅՈՒԼ, լիճ Ղրղզստանում՝ Տյան Շանում՝ 3016 *մ* բարձր-յան վրա: Մակերեսը՝ 274,6 *կմ*^{2}, առյգն խոր.՝ 22 *մ*: Լճից սկիզբ է առնում Նարինի վտակ Սոնգ Կյոլը:

ՍՈՆԳՈՏՅԱՆ (Աստվածատրյան) Խաչիկ Հովհաննեսի, **Սոնգոտ Քրիշտոֆ** (1843–1907), ազգագրագետ, հրապարակագիր, խմբ., թարգմանիչ: Գրել է հունգ.: 1887–1907-ին՝ *«Արմենիա»* ամսագրի հիմնադիր-խմբ.: Հեղինակ է «Սամոշույվար (Գեղա) հունգարահայերի մետրոպոլիսը գրով և պատկերներով» (1893), «Հունգարահայ գերդաստանների տոհմանունները» (1898), «Սամոշույվար (Գեղա) հայաբաղաքի պատմությունը» (հ. 1, 2, 1901, 1903), «Հունգարահայ ազգագրություն» (1903), «Հունգարների ծագումը և նրանց նախահայրենիքը» (1906) աշխ-ների: Հունգ. է թարգմանել Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» (1892), հայ.՝ Շ. Պետեֆիի և հունգար այլ գրողների գործերից:

ՍՈՆԵՏ (իտալ.՝ sonetto – հնչել), բանաստեղծության կառուցման կայուն ձևերից: Բաղկացած է 14 տողից՝ 2 քառատող և վերջում՝ 2 եռատող: Ս. ծագել է Իտալիայում XIII դ-ի 1-ին կեսին: Լայն ճանաչում է ձեռք բերել Դանտեի և Պետրարկայի քնարերգությունների շնորհիվ: Ս. իշխել է Վերածննդի և բարոկկոյի ժամանակաշրջանների քնարերգությունների մեջ: XVI դ-ում տարածվել է Իսպանիայում, Պորտուգալիայում, Անգլիայում (Լ. դը Վեգա, Պ. Ռոնսար, Վ. Շեքսպիր), XVII դ-ում՝ Գերմանիայում, XVIII դ-ում՝ Ռուսաստանում: Ս. սիրված և տարածված բանաստեղծ. ձև է եղել արևմտահայ քնարերգության մեջ, որտեղ «Ս.» բառացի թարգմանվել է «ինչյակ»: Ս-ներ են գրել Մ. Մեծարենցը, Վ. Թեքեյանը, Վ. Տերյանը, Ե. Չարենցը, Հ. Էդոյանը և ուր.:

ՍՈՆԹԱԳ, Զոնթագ (Sontag), Սյուզեն (1933–2004), ամերիկացի գրող, գրքննադատ: Հեղինակ է «Բարերարը» (1963), «Հրաբուխի երկրպագուն» (1992) վեպերի, «Ընդդեմ մեկնաբանությունների» (1966), «Սատուռնի նշանի ներքո» (1980) և էսսեների այլ ժող-ների:

ՍՈՆԻ ԼԱԲՈՒ ԹԱՆՍԻ (Sony Labou Tansi, իսկ. անունը՝ Մարսել Սոնի, 1947–1995), կոնգոլեզցի ֆրանսիագիր գրող, ռեժ.: Հեղինակ է հակաուտոպ., ֆանտաստիկ. «Մեկ ու կես կյանք» (1979), «Ամոթալի վիճակ» (1981) և այլ սատիր., «Լորսա Լոպեցի յոթ մենությունները» (1985), «Հրաբուխների աչքերը» (1988), «Տառապանքների սկիզբը» (1995) վեպերի: Ղեկավարել է «Ռոկադո Զուլու թատրոնը», որի համար գրել է «Ես կայսրության այրին եմ» (1987), «Ռոմեոյի և Ջուլիետի կարմիր ու սպիտակ հարությունը» (1990), «Այդ փառավոր, համարձակ, սովորական կյանքը» (1992) և այլ պիեսների:

ՍՈՆԻՃ (Nigella), գորտնուկազգիների ընտանիքի միամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 25 տեսակ (հիմնականում՝ Միջերկրածովայքում և Առաջավոր Ասիայում), ՀՀ-ում՝ 6՝ գրեթե բոլոր մարզերում: Գեղազարդիչ է, մեղրատու:

ՍՈՆԻՆԿԵ, մանդե խմբի ժողգ Մալիի արմ-ում (1 մլն, 2010), Կոտ դ'Իվուարում (170 հզ.), Սենեգալի հս-արլ-ում (270 հզ.), Գամբիայում (170 հզ.) և Մավրիտանիայի հվ-ում (40 հզ.): Լեզուն՝ սոնինկե: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են, կան նաև կաթոլիկներ:

ՍՈՆՀԱՅՆԵՐ, ժողգ-ների խումբ Նիգերում (5,5 մլն, 2010), Մալիում (1,3 մլն), Բուրկինա Ֆասոյում (170 հզ.), Նիգերիայում (430 հզ.), Բենինում (100 հզ.), իսկական Ս. են ջերմանները, կորիյաբոռոները, դենդիները ևն: Լեզուն՝ սոնհայ.: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են: Ունեցել են պետություն՝ Սոնհայ (Գաո կայսրություն), XVI դ.), մայրաքաղաքը՝ Գաո:

ՍՈՆՆԻՄ, ք. Կորեայի ԺԴՀ-ում՝ Փհենյանից հվ-արմ.: Բն.՝ 160 հզ. (2010): Նվիաղատ՝ Տեղոնջոն գետի ափին: Մետաղագործության խոշոր կենտրոն է («Վանհե» համալիր):

ՍՈՆՆԻՆՈ Սիդնեյ (1847–1922), Իտալիայի վարչապետ՝ 1906 և 1909–10-ին, 1914–19-ին՝ ԱԳ նախարար: ԱՀՊ-ի սկզբին մասնակցել է Լոնդոնի պայմանագրի (1915) նախապատրաստմանը, որով Իտալիան պատերազմի մեջ է մտել *Անտանտի* կողմում:

ՍՈՆՈՐԱ, (Sonora), նահգ Մեքսիկայի հս-ում: Տարածքը՝ 182,1 հզ. *կմ*^{2}, բն.՝ 2,67 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ *Էրմոսիլո*:

ՍՈՉԻ, ք. (1917) ՌԴ Կրասնոդարի երկրամասում, խոշոր նվինգստ Սև ծովի ափին: Բն.՝ 337,9 հզ. (2009): Ունի օդանավակայան (Ադլերում): Ջերմուկաբուժ. (Մացեստա) և կլիմ. խոշոր առողջարան է: Մեծ Ս. ձգվում է գրեթե 150 *կմ* ծովի երկայնքով՝ Շեպսի գետից մինչև Փսոու գետը: Ներառում է Լազարևսկի, Կենտր., Խոստայի, Ադլերի շրջանները՝ Մակոպսե, Աշե, Լազարևսկոե, Խոստա, Ադլեր, Կրասնայա Պոլյանա և այլ առողջարան. բնակավայրերով: Ս-ում գործում են Առողջության և ֆիզիոթերապիայի ինստ-ը, 4 թանգարան (այդ թվում՝ գրականագիտահուշգր.՝ Ն. Ա. Օստրովսկու անվ.), թատրոն, դենդրարիում, արգելոց: Հիմնադրվել է 1828-ին: XXII ձմեռ. օլիմպ. խաղերի մայրաքաղաքը (2014):

ՍՈՉԻՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ, գործել է 1925–31-ին: Թատերախմբում էին Արփենիկ և Աղասի Նալչաջյանները, Վ. Սիրվանյանը, ռեժ-ներ Ս. Սարդարյանը, Ա. Կայծունին և ուր.: Բեմադրություններից են՝ Վ. Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը», Մ. Յ. Լերմոնտովի «Դիմակահանդես», «Սոս և Վարդիթեր» (ըստ Պ. Պռոշյանի) ևն:

ՍՈՊԻԿՈՎ, Վասիլի Ստեպանովիչ (1765–1818), ռուս գրքագետ: Ռուս. մատենագիտ-յան հիմադիրներից: Հեղինակ է «Փորձ ռուսական մատենագիտության» (մաս 1–5, հրտ.՝ 1813–21) աշխ-յան. պարունակում է մինչև XIX դ-ի սկիզբը լույս տեսած ռուս. և հինսլավոն. ավելի քան 13 հզ. հրտ-յան տվյալներ:

ՍՈՊԿԱ, կլորավուն գագաթով բլուրների կամ մեկուսացած լեռների ընդհ. անվանումն Անդրբայկալում և Հեռավոր Արևելքում, ինչպես նաև հրաբուխները՝ Կամչատկայում, Ղրիմում և Կովկասում:

ՍՈՊՐԱՆՈ (իտալ.՝ soprano, < sopra – վեր), 1. ամենաբարձր երգչաձայնը (կանանց և երեխաների): Տարբերում են դրամատիկ., քնար., կոլորատուր., նաև քնարադրամատիկ. և այլ տեսակներ: 2. Վերևի ձայների երգամասը երգչախմբում: 3. Բարձր ռեգիստր ունեցող երաժշտ. գործիքների տեսակ:

ՍՈՍԵ ՄԱՅՐԻԿ (Վարդանյան Սոսե, 1868–1953, 1998-ին աճյունը տեղափոխվել է Երևան, թաղված է Եռաբլուրում), ազգ-ազատագր. շարժման գործիչ: *Աղբյուր Սերորի* կինը և զինակիցը: 1899-ին Գելիեգուզան գ-ում՝ թունավորված Սերորի, Հակոբ որդու և Սերորի եղբայրների (զոհվել են մարտում) հետ զինված դիմադրություն է ցույց տվել թշնամուն: Վիրավոր գերվել է և տարվել Բիթլիս (շուտով ազատվել է): 1904-ի Սասունի ապստամբությունից հետո անցել է Վան, այնտեղից՝ Կովկաս: 1920-ից հետո ապրել է Կ. Պոլսում, ապա՝ Ալեքսանդրիայում:

ՍՈՍԻ (Platanus), սոսազգիների ընտանիքի տերևաթափ ծառերի ցեղ: Հայտնի է մոտ 10 տեսակ, ՀՀ-ում՝ 2 (արլ. և թխկիատերև): Առավել տարածված է 2-րդը: Հզոր ծառ է, բարձր.՝ մինչև 50 *մ*: Ապրում է ավելի քան 2000 տարի: Արլ. Ս. ՀՀ-ում անհիշելի ժամանակներից

համարվել է սրբազան ծառ. Անահիտ աստվածուհու մեհյանը շրջապատված էր Սոսյաց հոչակավոր անտառով: Թխկիատերև Ս. ներմուծված է, աճում է ամենուրեք: Օգտագործվում է քաղաքների կանաչապատման մեջ:

ՍՈՍԻՆՁՆԵՐ, բնական և սինթետիկ նյութեր, օգտագործվում են թուղթը, փայտը, կաշին, կտորեղենը, մետաղը, ապակին, ռետինը, խեցեղենը, պլաստմասսաները ևն սոսնձելու (փակցնելու) համար: Սինթետիկ պոլիմերներից (պոլիէսթեր., էպօքսիդ., ֆենոլֆորմալդեհիդ. խեժեր) պատրաստված օրգ. Ս-ի համար բնութագրական են սոսնձելու մեծ ամրությունը և տարբեր միջավայրերում կայունությունը: Բնական պոլիմերներից (կոլագեն, ալբումին, օսլա, կազեին) պատրաստված Ս. տարբերվում են ջրի և միկրոօրգանիզմների ազդեցության նկատմամբ ոչ մեծ կայունությամբ: Անօրգ. են սիլիկատ., խեցեգործ. և այլ Ս.: Ս. լինում են հեղուկ (լուծույթներ, էմուլսիաներ) և պինդ (թաղանթներ, փոշիներ, ձողիկներ), որոնք օգտագործելուց առաջ հալեցնում են կամ սոսնձվող մակերևույթը տաքացնում:

ՍՈՍՅԱՆ Սոս (Ղլիջյան Հովսեփ) Նիկոլայի (1928–2008), դերասան: ՎԽՍՀ ժող. արտիստ (1984): 1947–70-ին (ընդհատումով)՝ Թբիլիսիի հայկ. թատրոնի (Արա՝ Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ», Պեպո՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», Նինկովիչ՝ Բ. Նուշիչի «Տիկին մինիստրուհին», ևն): 1954–56-ին՝ Հայֆիլմի դերասան, նկարահանվել է «Ուրվականները հեռանում են լեռներից», «Հասցեատիրոջ որոնումները» (երկուսն էլ՝ 1955, Հայֆիլմ) կինոնկարներում:

ՍՈՍՅՈՒՐ (Saussure), շվեյցարացի բնագետներ, հայր և որդի: **Օրաս Բենեդիկտ Ս.** (1740–1799), նկարագր. երկրբ-յան հիմնադիրներից, առաջինն է հետազոտել Ալպերի երկրբ. կառուցվածքը: **Նիկոլայ Թեոդոր Ս.** (1767–1845), աշխ-ները վերաբերում են բույսերի ֆիզիոլոգիային. բույսերի շնչառության մասին ուսմունքի հիմնադիրը:

ՍՈՍՅՈՒՐ Ֆերդինանդ դը (1857–1913), շվեյցարացի լեզվաբան: Կառուցվածք. լեզվաբ-յան հիմնադիրը Եվրոպայում: Առաջինն է առաջարկել լեզուն քննել որպես համակարգ (կառուցվածք): Զգալի ազդեցություն է թողել լեզվաբ-յան, նշանագիտ-յան, գրականագիտ-յան որոշ բաժինների զարգացման վրա: Գլխ. երկը «Ընդհանուր լեզվաբանության դասընթաց» (1916) աշխ-ն է:

ՍՈՍՅՈՒՐԱ Վլադիմիր Նիկոլաևիչ (1897/98–1965), ուկրաինացի բանաստեղծ: Հեղինակ է «Այսօր» (1925), «Ընպեսզի պարտեզներն աղմկեն» (1947), «Ծիծեռնակներն արևի տակ» (1960) և այլ ժող-ների, «Գնդակահարված անմահություն» (1960, հրտ.՝ 1988) պոեմի: ԽՍՀՄ (1948), Ուկր. ԽՍՀ (1963) Պետ. մրց-ներ:

ՍՈՍՆԱՁԱԿԵՌՆԵԽ (Turdus viscivorus), *կեռնեխների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է: Մարմնի երկ.՝ 27, թևերի բացվածքը՝ 42–47,5 *սմ*, կ. զ.՝ 115–120 *գ*: Զայնն ինքնատիպ է՝ բարձր ու աղմկոտ: Ապրում է անտառի բացատներում, պտղատու այգիներում, պուրակներում, ծառածածկ գետափերին և այլուր: Մնվում է անողնաշարներով, ձմռանը՝ պտուղներով ու սերմերով: Օգտակար է. ոչնչացնում է միջատներ (հատկապես՝ ոչխարների ու այծերի ճիճվային հիվանդություններ տարածող թրթուրներ):

ՍՈՍՈՅԱՆ Միհրան Ռուբենի (1928–1992), նկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (1967): Պրոֆ. (1988): 1964-ից՝ «Հայաստան» հրտչ-յան, 1968-ից՝ Հայհրատպետկոմի գլխ. նկարիչ: Ստեղծագործել է հիմնականում գրքի ձևավորման բնագավառում (Հ. Թումանյանի «Գիքորը», 1955, Ե. Չարենցի «Ամբոխները խելագարված», 1967, Հ. Խաչատրյանի «Էրեբունի», Ն. Զարյանի «Սասունցի Դավիթ», երկուսն էլ՝ 1968, Ս. Զորյանի «Պապ թագավոր», 1989, ևն): Հեղինակ է նաև նկարաշարերի («Բուլղարական մոտիվներ», 1968, ևն), գրաֆիկ. թերթերի (լինոփորագրություններ):

ՍՈՍՎԱ, գետ Ուրալում և Արմ. Սիբիրում: Երկ.՝ 635 *կմ*, ավազանը՝ 24,7 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 150 *մ*^{3}/*վ*: Լուղարկելի է: Նավարկելի է 333 *կմ*:

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ», գիտատես., քննադատ. և գեղ. ամսագիր (1932–96, Երևան, 1932–38 և 1940–41-ին՝ «Խորհրդային արվեստ», 1943–55-ին՝ «Սովետական գրականություն և արվեստ» վերնագրերով՝ *«Սովետական գրականություն»* ամսագրի հետ, 1955–89-ին՝ «Ս. ա.», 1989–96-ին՝ *«Արվեստ»*):

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», գր-գեղ., տես-քննադատ. ամսագիր (1940–1943, 1955–88, Երևան), 1988-ից՝ *«Նորք»*:

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ», հրտչ-յուն: Ստեղծվել է 1976-ին (առանձնացել է *«Հայաստան»* հրտչ-յունից) Երևանում: 1991-ից՝ *«Նահիր»*:

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ», շաբաթաթերթ (1932–97, Երևան): 1997-ից՝ *«Կրթություն»*:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԾԱՆՐԱՔԱՇ ՅԵՂ, ձիերի, ստացել են Ռուսաստանում XX դ-ի կեսերին: Շիկավուն է, շիկավուն խայտաբղետ: Կենդանիներն աչքի են ընկնում բարձր աշխատունակությամբ: Օգտագործում են որպես բանող և ցեղաբարելավող, ինչպես նաև կաթնատու և մսատու ձիաբուծության մեջ:

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», օրաթերթ (1920–90, Երևան): 1991-ից՝ *«Հայաստան»*:

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», հանդես (1945–88, Երևան): 1989–90-ին՝ *«Վերածնված Հայաստան»*:

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂԱԶԱԽԱՍՏԱՆ», պարբերաթերթ (1923-ից, Ստեփանակերտ): 1998-ից՝ *«Ազատ Արցախ»*:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԱՆԴԵՐ, մորթատու, միջին բրդատվության տեղ. ճագարի ցեղ: Բուծվել է Հայաստանում 1931–41-ին՝ ռուս. լեռն., շինշիլա, երկնագույն մազածածկով տեղ. ճագարների ցեղի բարդ վերարտադր. տրամախաչման միջոցով: Բուծման աշխ-ները ղեկավարել է Մալխաս *Բագրատյանը*: Մազածածկը խիտ է, փայլուն, մուգ կամ բաց շագանակագույն: Իրանի միջին երկ.՝ 50,5, կրծքի փաթը՝ 33,4 *սմ*: Միջին կ. զ.՝ 3,8 *կգ*: Պտղատվությունը՝ 7 ճագարիկ: Փոքր քանակներով բուծվում է որոշ գյուղաց. տնտ-յուններում:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԵՐԻՆՈՍ, ռուս. նրբագեղմ, բրդամսատու ոչխարների ցեղ: Ստացվել են 1925–40-ին բրդատու և բրդամսատու տիպեր: Բուրդը մերինոս է, խիտ, հավասար բարակությամբ և երկ-ամբ: Երկ.՝ 7,5–10 *սմ*: Խոյերի բրդատվությունը՝ 13–16 *կգ*, մաքիներինը՝ 9–7 *կգ*: Բրդամսատու տիպի խոյերի կ. զ.՝ 115 *կգ*, մաքիներինը՝ 50–60 *կգ*, բրդատուներինը՝ 5–10 *կգ* պակաս:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՇԻՆՇԻԼԱ, ճագարների ռուս. մսամորթատու ցեղ: Հաստատվել է 1963-ին: Սեռահասուն ճագարների կ. զ.՝ մոտ 5 *կգ*: Միջին պտղատվությունը՝ 7–8 ճագար: Մազածածկույթը խիտ է, արծաթագորշ կապտավուն, պոչի ներսի մասում և ոտքերի ներքին կողմում՝ գրեթե սպիտակ:

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍԱՐԱՎԱՆԴ», սառցե սարավանդ, Արլ. Անտարկտիդայի առավել բարձր մասը: Երկ.՝ մոտ 2000 *կմ*, լայն.՝ մոտ 450 *կմ*, բարձր. ծայրամասում՝ 3500 *մ*, կենտր. մասում՝ 4000 *մ*: Սառցածածկույթի հաստ.՝ 750–3800 *մ*: Անտարկտիդայի առավել ցուրտ մասն է. տարեկան միջին ջերմաստիճանը՝ –50°C: Հայտնագործել է Խորհրդ. արշավախումբը 1957–58-ին: Գործել է «Վոստոկ» գիտ. կայանը:

ՍՈՎԻ (Sauvy) Ալֆրեդ (1898–1990), ֆրանսիացի սոցիոլոգ, ժողովրդագիր և տնտեսագետ: Ուսումնասիրել է ժողովրդագր. գործընթացների ազդեցությունը հասյան, տեխ. գործընթացի ազդեցությունը բնակչության վրա, սերունդների հարաբերությունները ևն: Հեղինակ է «Ազգաբնակչության ընդհանուր տեսություն» (հ. 1, 2, 1952, 1954), «Մեր օրերի դիցաբանությունը» (1965), «Հարուստների վերջը» (1975) և այլ աշխ-ների:

«ՍՈՎԻՆՖՈՐՄԲՅՈՒՐՈ» (ռուս., Խորհրդ. տեղեկատվության ղեկ. մարմին), ԽՍՀՄ քաղ. կառույց 1941–61-ին, ղեկավարել է ԶԼՄ-ների աշխ-ը: 1961-ին «Ս.»-ի հիմքի վրա ստեղծվել է Նորությունների մամուլի գործակալությունը (2004-ից՝ *«Նորություններ» ռուսական պետական գործակալություն*):

ՍՈՎՅԱԼ ՏԱՓԱՍՏԱՆ, Հարավային սովյալ տափաստան, հարթավայր Սիրդարիայի ձախափնյակում, հիմնականում՝ Ուզբեկստանում: Տարածքը՝ 10 հզ. *կմ*^{2}, բարձր.՝ 385 *մ*: Տարածքի մեծ մասը ոռոգվում է (Հս., Կենտր., Հվ-սովյալ տափաստան. ևն) ջրանցքների ջրերով: Ուզբեկստանի բամբակագործության շրջաններից է:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՅԾԿԻԹ (Caprimulgus europaeus), *այծկիթների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 26–28, թևերի բացվածքը՝ 57–64 *սմ*: Գիշեր. թռչուն է, հաճախ ճանաչելի է մոլտոց հիշեցնող ձայնով: Առավել տեսանելի է մթնշաղին: Մնվում է հիմնականում գիշեր. թիթեռներով: Լայնորեն տարածված է, սակայն խուսափում է խիտ անտառներից ու ցանքատարածություններից:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԴԱՇՏԱՄՈՒԿ (Microtus arvalis), *համալրանմանների* ընտանիքի դաշտամկների ենթաընտանիքի կրծող կենդանի: ՀՀ-ում տարածված է բոլոր կլիմ. գոտիներում, հազվադեպ՝ նաև անտառներում և մերձարևադարձ. կիսաանապատներում: Մարմնի երկ.՝ մինչև 140, պոչինը՝ 49 *մմ*, կ. զ.՝ մինչև 55 *գ*: Հետին թաթի տակ կա 6 կոշտուկ: Մնվում է բուս. կերով, երբեմն՝ միջատներով, բազմանում է տարին 4–5 անգամ: Ակտիվ է տարվա բոլոր եղանակներին: Վնասում է գղտ. բույսերը: Մի շարք վարակիչ հիվանդությունների (տուլարեմիա, ժանտախտ) հարուցչակիր է:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԴՐԱԽՏԱՊԱՆ (Emberiza citrinella), *դրախտապաններ*ի ընտանիքի թռչուն: Զմեռող է, տարածված: Մարմնի երկ.՝ 16–16,5, թևերի բացվածքը՝ 23–29,5 *սմ*: Ապրում է թփուտածածկ, չոր, բաց տարածություններում: Մնվում է սեր-

մերով, անողնաշարներով: ՀՀ-ում տարածված է կիսաանապատներից մինչև անտառ. գոտի: Ընտելանում է անազատ պայմաններին:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԵՐԿԱՐԱԹԵՎ ՉՂՋԻԿ (Miniopterus schreibers), հարթաքիթ չղջիկների ընտանիքի կաթնասուն կենդանի: Մարմնի երկ.՝ 50–59, պոչինը՝ 47–59 *մմ*, նախաբազկինը՝ 46 *մմ*, կ. զ.՝ մոտ 15 *գ*: ՀՀ-ում համարվում է հվ. մարզերի բնակիչ, հազվադեպ (շոգ տարիներին) հանդիպում է նաև հս. մարզերում (օր.՝ Սևանա լճի ափերին): Ապրում է քարանձավների ժայռածեղքերում, շինքերի և եկեղեցիների տանիքների, նկուղների խոնավ մասերում: Մսվում է գիշեր. թիթեռներով, երկթևանիներով: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԼՈՐՏՈՒ (Natrix natrix), *լորտուների* ընտանիքի իսկական լորտուներ սեռի օձ: Հանդիպում է ՀՀ բոլոր մարզերի լեռն. շրջաններում, երբեմն՝ նաև նախալեռներում: Տարածված է կանգուն և հոսող ջրավազանների ջրամերձ կենսավայրերում ևն: Մարմնի երկ.՝ 11–120 *սմ*, պոչը՝ 3–5 անգամ մարմնից կարճ: Մարմինը բարեկազմ է: Որոշ վայրերում հանդիպում են դեղնավուն զոլերով մուխրագույն առանձնյակներ, որոնք համարվում են առանձին ենթատեսակ՝ **պարսկական լորտու**: Մսվում է մանր ողնաշարավորներով: Խնամվում է անազատ պայմաններում: Օգտագործվում է ԳՀ նպատակներով: Կծում է շատ հազվադեպ, որը մարդու և կենդանիների համար վտանգավոր չէ:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԼՌՔՈ (Silurus glanis), *լոքյաձկների* ընտանիքի ձուկ: Հանդիպում է դանդաղահոս գետերի մերձհատակ. մասերում, ՀՀ-ում՝ Արաքս, Մեծամոր, Ախուրյան, Արփա, Որոտան գետերում, Արարատյան դաշտի ջրանցքներում և լճակներում: Մարմնի երկ.՝ 60–90 *սմ* (երբեմն՝ 2–3 *մ*), կ. զ.՝ 150 *կգ* և ավելի: Գիշատիչ է, սնվում է փափկամարմիններով և զանազան մանր ողնաշարավորներով: Արժեքավոր տեսակ է, սիրող. ձկնորսության ձուկ:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԽԱԾԿՏԻԿ (Pyrrhula pyrrhula), *ակռինոների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 14,5–16, թևերի բացվածքը՝ 22–29 *սմ*, կ. զ.՝ 25–29 *գ*: Մարմինը գեր է, կտուցը՝ հաստ: Ապրում է սաղարթախիտ և խառնանտառներում, անտառապատ գետահովիտներում: Մսվում է սերմերով, բույսերի բողբոջներով, որոշ անողնաշարներով: Արագ ու հեշտ ընտելանում է անազատ պայմաններին: Գեղագիտ. արժեք ունի:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱԳՈՐՏ, **Շելկովնիկովի ծառագորտ** (Hyla schelkovnikovi), անպոչ երկկենցաղների կարգի *ծառագորտների* ընտանիքի գորտ: ՀՀ-ում տարածված է Լոռու, Տավուշի, Կոտայքի մարզերում: Ապրում է ջրամերձ վայրերում: Մարմնի երկ.՝ 1,8–5,3 *սմ*: Արուների ստորին ծնոտի տակ կա մուգ գույնի ձայնապարկ, որի միջոցով արձակում են բարձր, սղոցող ձայներ: Վարում է մթնշաղ. և գիշեր. կենսակերպ: Օգտակար է. ոչնչացնում է մնասատու փափկամարմիններին ու միջատներին:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԿԱՉԱՂԱԿ (Poca pica), *ագռավների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է: Մարմնի երկ.՝ 44–46 *սմ*, կ. զ.՝ 250 *գ*: Գետնի վրա քայլում է պոչը վեր ցցած: Սչքի է ընկնում տրամաբ. գործողություններ կատարելու ունակությամբ: Խոշոր քաղաքներում սան. վիճակի ցուցիչ է: Վնասակար է. ոչնչացնում է որսի և մանր այլ թռչունների (կաքավ, լոր, արտույտ) ու մեծ քանակությամբ ձվեր: Ուստի կիրառվում են թվաքանակի նվազեցման միջոցներ:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԿԱՐՄՐԱՏՈՒՏ (Phoenicurus), *կեռնեխների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, տարածված: Մարմնի երկ.՝ 14, թևերի բացվածքը՝ 20,5–24 *սմ*, կ. զ.՝ 14–15 *գ*: Նստած տեղից հաճախակի վայր է նետվում՝ կեր որսալու: Մսվում է անողնաշարներով, պտուղներով: Նպաստում է մնասատու միջատների դեմ կենսբ. պայքարի արդյունավետությանը:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԿԻՎԻՎ (Vanellus vanellus), *քարադրների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է, տարածված: Մարմնի երկ.՝ 28–31, թևերի բացվածքը՝ 82–87 *սմ*: Վառ նախշերով, փոփուլավոր կիվիվ է: Ապրում է ծանծաղուտներում, թաց մարգագետիններում, ոռոգվող դաշտերում: Մսվում է անողնաշարներով: Աշնանը կազմում են մեծ երամներ և հիմնականում ձմեռում են Արարատյան դաշտում: Սիրող. և մարզ. որսաթռչուն է:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԿԿՈՒ (Cuculus canorus), *կկուների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, տարածված: Մարմնի երկ.՝ 32–34, թևերի բացվածքը՝ 55–56 *սմ*, կ. զ.՝ 100 *գ*: Պոչը երկար է, թևերը՝ նեղ: Թռչում է ուղիղ գծով՝ թևերը մարմնից ոչ բարձր պահած: Արձակում է երկինչյուն կրկնվող ձայներ: Ապրում է խոտածածկ տարածքներում, թփուտներում, եղեգնուտներում: Զվադրում է այլ թռչունների բներում (բնային մակաբուծականություն): Օգտակար է. ոչնչացնում է մնասատու միջատների թրթուրները:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՀՈՂՄԱՎԱՐ ԲԱՋԵ (Faleo tinnunculus), *բազների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է: Մարմնի երկ.՝ 32–35, թևերի բացվածքը՝ 71–80 *սմ*: Պոչը երկար է, կլորավուն, նախածայրաշերտը՝ լայն: Սավառնում է պոչը հովհարանման բացած, հաճախ կանգ առնում օդում: Ապրում է կիսաանապատներում, լ–տափաստաններում, ենթալպ. տարածքներում, գետաձորերում: Մսվում է միջատներով, թռչուններով, մանր կաթնասուններով: Օգտակար է. ոչնչացնում է գաղտ. վնասատուներին:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՃԱՅ (Corvus monedula), *ագռավների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է, տարածված: Մարմնի երկ.՝ 39–34, թևերի բացվածքը՝ 67–74 *սմ*: Կտուցը կարճ է, պոչը՝ թեթևակի կլորավուն: Կերակրվում և հաճախ բնադրում են մեծ խմբերով: Երամներն աղմկոտ են: Մսվում է անողնաշարներով, սերմերով, սննդի մնացորդներով: Արարատյան դաշտում բնադրման փաստն արձանագրվել է 2001–ից:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՄՈՂԵՍԱՕՁ (Malpolon monspessianus), *լորտուների* ընտանիքի մողեսաօձերի սեռի օձ: ՀՀ-ում հանդիպում է Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի նախալեռն. շրջաններում: Մարմնի երկ. տարիքի հետ փոխվում է (22–140 *սմ*), պոչը 3–4 անգամ կարճ է մարմնից: Մարմինը բարեկազմ է, բնորոշ է գլխի դիմային մասի արտափքվածությունը: Վերին ծնոտին կան 1 զույգ թունամուղ ատամներ: Խնամում են անազատ պայմաններում, օգտագործում ԳՀ նպատակով: Խոշոր օձի կծածը վտանգավոր է մարդու և կենդանիների կյանքի համար:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՈՍՊՆՈՒԿ (Carpodacus erythripus), *ակռինոների* ընտանիքի երգեցիկ թռչուն: Բնադրող է, չվող: Մարմնի երկ.՝ 14,5–15, թևերի բացվածքը՝ 24–26,5 *սմ*, կ. զ.՝ 19–26 *գ*: Կտուցը հաստ է: Արուների երգը նման է հաճախակի կրկնվող սուլոցների: Ապրում է կիսաանապատներից մինչև մերձալպ. գոտի: Մսվում է սերմերով, մանր անողնաշարներով: Հաջողությամբ ընտելանում է անազատ պայմաններին: Թվաքանակը խիստ նվազել է, պաշտպ–յան կարիք ունի:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՈՐՈՐ (Larus ridibunda), *որորների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է: Մարմնի երկ.՝ 34–37, թևերի բացվածքը՝ 100–110 *սմ*, կ. զ.՝ 250–400 *գ*: Կտուցը նրբագեղ է: Ապրում է լճակներում, լճերում, գետերում: Մինչև 1970-ական թթ. բնադրագաղութներն զբաղեցրել են Արփի լճի 2 կղզիները, որոնք աստիճանաբար զբաղեցրել է ***հայկական որորը***: Ներկայում չունենալով համապատասխան էկոմիջավայր՝ Արարատյան դաշտի լճակներում և Երևանյան լճում մնում է հյուրի կարգավիճակով:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՊՂՆՁՕՁ (Coronella austriaca), **սովորական պսակաօձ**, **ավստրիական պսակաօձ**, լորտուների ընտանիքի պղնձօձեր սեռի օձ:

ՀՀ-ում հանդիպում է Շիրակի, Արագածոտնի, Կոտայքի, Գեղարքունիքի, Լոռու, Տավուշի և այլ մարզերի կիսախոնավ և խոնավ լ–տափաստան., թփուտ. ու խոնավասեր նոսրանտառներում, այգիներում և այլուր: Մարմնի երկ.՝ 13–70 *սմ*, պոչը՝ 4–6 անգամ կարճ: Էգը խոշոր է արուից: Մսվում է մանր ողնաշարավորներով: Խնամում են անազատ պայմաններում, օգտագործում ԳՀ նպատակներով: Կծածը մարդու և կենդանիների համար վտանգավոր չէ:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՍԱՐՅԱԿ (Sturnis vulgaris), *սարյակների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է: Մարմնի երկ.՝ 21,5, թևերի բացվածքը՝ 37–42 *սմ*, կ. զ.՝ 73–98 *գ*: Ապրում է բնակավայրերի հարևանությամբ: Մսվում է անողնաշարներով, պտուղներով: Համարվում է գարնան ավետաբեր: Օգտակար է. ոչնչացնում է միջատներին:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՍԵՐԻՆՈՍ (Eringilla mantifringilla), *ակռինոների* ընտանիքի թռչուն: Զմեռող է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 14, թևերի բացվածքը՝ 26–28 *սմ*: Կեր է փնտրում գետնին, ծառերի տակ՝ թաքստոցին մոտիկ: Կազմում է մինչև 300 անհատից բաղկացած երամներ: Ապրում է անտառներում, պտղատու այգիներում, պուրակներում: Մսվում է սերմերով: Օգտակար է. ոչնչացնում է մոլախոտերը: Համարվում է անազատ պայմաններին: Բարձր գեղագիտ. արժեք ունի:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՍԻՏԵՂ (Sitta europaea), *սիտեղների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է: Մարմնի երկ.՝ 14, թևերի բացվածքը՝ 22,5–27 *սմ*, մագլցում է ծառաբնով: Ապրում է բարձրաբուն անտառներում, գետափերին: Մսվում է անողնաշարներով, սերմերով:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՍՈՒԽԱԿ (Luscinia luscinia), *կեռնեխների* ընտանիքի երգեցիկ թռչուն: Բնադրող է, չվող: Մարմնի երկ.՝ 18,6, թևերի բացվածքը՝ 24–26,5 *սմ*, կ. զ.՝ 25 *գ*: Երգում է գիշեր–ցերեկ: Ապրում է անտառներում, այգիներում:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՍՊՈՒՆԳՆԵՐ, *սպունգների* տիպի անողնաշարների դաս: Հայտնի

է 2 կարգ՝ 4–ճառագայթանի և կայծքարաեղջյուրավոր սպունգներ:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՏԱՏՐԱԿ (Streptorelia turtur), *աղավնիների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 26–28, թևերի բացվածքը՝ 47–53 *սմ*, կ. զ.՝ 110–130 *գ*: Ապրում է նոսրանտառներում, այգիներում: Մնվում է հիմնականում սերմերով: Սիրող. որսի թռչուն է:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՏՐԻՏՈՆ (Triturus vulgaris), *սալամանդրների* ընտանիքի տրիտոններ սեռի պոչավոր երկկենցաղ: ՀՀ-ում հանդիպում է միայն Լոռու մարզում: Ապրում է խոնավ անտառ. ու մարգագետնատափաստան. գոտու ջրավազաններում և նրանց մերձակայքում: Մարմնի երկ.՝ 1,2–6,2 *սմ*, պոչը՝ գրեթե նույն երկ-յան: Վարում է հիմնականում գիշեր. և մթնշաղ. կյանք: Մնվում է մանր անողնաշարներով: Օգտակար է. ոչնչացնում է վնասատու փափկամարմիններին ու միջատներին: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՔԱՌԹԱԿ (Gobio gobio), *ծածանաձկների* ընտանիքի ձուկ: ՀՀ ջրամբարներում հայտնաբերվել ու նկարագրվել է 1998-ին: Հանդիպում է Արաքս, Ախուրյան, Հրազդան, Մեծամոր գետերում և նրանց հարող ջրանցքներում: Մանր ձուկ է: Մարմնի երկ.՝ 12–15 *սմ*, կ. զ.՝ 50 *գ* և ավելի: Ապրում է վտառներով՝ գետերի ու ջրանցքների դանդաղահոս տեղամասերում: Վարում է մերձհատակ. կյանք, սնվում բենթոս. անողնաշարներով:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՔԱՐԱԹՈՒԶՆԱԿ (Oenanthe oenanthe), *կառնևինների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող: Մարմնի երկ.՝ 14,5–15,5, թևերի բացվածքը՝ 26–32 *սմ*, կ. զ.՝ 17–28 *գ*: Ապրում է բաց քարքարոտ հարթավայրերում, չուի ընթացքում՝ դաշտերում ու խոտածածկ տարածքներում: Մնվում է անողնաշարներով, հատապտուղներով: Երգում է 15–30 *մ* բարձրյամբ թռչելիս: Օգտակար է. ոչնչացնում է վնասատու բզեզներին և կիսակարծրաթևերին: Թվաքանակը կայուն է:

ՍՈՎՈՐՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎԱՒՆՔ, սովորույթների համակցություն, որն օժտված է պետ. հարկադրանքի ուժով: Իրավունքի պատմ. 1-ին ձևն է: Իրավունքի համակարգի մեջ են մտնում միայն այն սովորույթները, որոնք կատարում են իրավ. նորմի գործառույթներ: Ներկայում Ս. ի. կիրառվում է սահմանափակ (միայն դատ. պրակտիկայում, որտեղ սովորույթի հիման վրա լուծվում են դատ. գործեր): Ավելի լայն կիրառում ունի միջազգ. հարաբերություններում: Ս. ի. լայնորեն կիրառվել է նաև հին և միջնադար. Հայաստանում: Իրավունքի բոլոր ճյուղերը ձևավորվել են նախ և առաջ Ս. ի-ի նորմերից: Ս. ի-ի հարուստ աղբյուրներ են Մխիթար Գոշի, Սմբատ Սպարապետի դատաստանագրքերը, «Թուղթ ընդհանրականը», «Կանոնական օրինադրությունը», «Կանոնագիրք հայոցը», հայ թագավորների հրապարակած օրենքներն ու հրամանները:

«ՍՈՎՐԵՄԵՆՆԻԿ» (“Современник”–«Ժամանակակից»), 1. ռուս. գր., հաս-քաղ. հանդես (1836–46, Ս. Պետերբուրգ): Հիմնադիր-խմբ.՝ Ա. Ս. *Պուշկին*, 1837-ից՝ խմբ-ներ՝ Պ. Ա. Վյազեմսկի, Վ. Ա. Ժուկովսկի, Պ. Ա. Պլետնյով: 2. Ռուս. հասքաղ., գր., արվ-ի ամսագիր (1847–66, Ս. Պետերբուրգ): Ռուս հեղ. դեմոկրատների պաշտոնաթերթ: Հրտ-խմբ-ներ՝ Ն. Ա. Նեկրասով, Ի. Ի. Պանաև: Գաղ. ղեկը եղել է Վ. Գ. Բելինսկին, ապա՝ Ն. Գ. Չեռնիշևսկին, Ն. Ա. Դոբրոլյուբովը, աշխատակցել են Ա. Ի. Գերցենը, Ն. Պ. Օգարյովը, Ի. Ս. Տուրգենևը, Լ. Ն. Տոլստոյը, Մ. Ե. Սալտիկով-Շչեդրինը: 3. Ռուս. քաղ., պատմ., գիտ., գրկ-յան, արվ-ի ամսագիր (1911–15, Ս. Պետերբուրգ): Խմբ-ներ՝ Ա. Վ. Ամֆիտեատրով, Ն. Ն. Սուխանով:

ՍՈՐԱԿԲԱ, ք. Բրազիլիայի Սան Պաուլու նահգ-ում: Բն.՝ 646 հզ. (2010): Ունի բուհեր, պատմ. թանգարան:

ՍՈՐԲԻ (Sorby) Հենրի Կլիֆտոն (1826–1908), անգլիացի բնախույզ, երկրբ. ջերմաչափության հիմնադիրներից: Անգլիայի թագավոր. ընկ-յան անդամ (1857, նախագահ՝ 1878–80-ին): Հանքավայրերի և լեռն. ապարների ուսումնասիրման համար օգտագործել է միկրոսկոպ:

ՍՈՐԲԻՆԱԹԹՈՒ (տրանս, տրանս-2,4-հեքսանդիենային թթու), $CH_3CH=CHCH=CHCOOH$, անգույն բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 134°C: Պարունակվում է Sorbus aucuparia – արոսիի հյութում (այստեղից՝ անվանումը): Կիրառում են սննդամթերքի պահածոյացման համար և օրգ. սինթեզում:

ՍՈՐԲԻՏ, 1. մետաղագիտ-յան մեջ (անգլիացի գիտնական Հ. Կ. Սորբիի անունից) պողպատի կառուցվածք. բաղադրիչ է, ֆերիտի և ցեմենտիտի էվտեկտիկ խառնուրդ: Պեռլիտի տարատեսակ է, ունի ավելի նուրբ կառուցվածք, որն ապահովում է պողպատի բարձր ամրություն և մաշակայունություն:

2. $HOCH_2(CHOH)_4CH_2OH$, ալիֆատիկ շարքի վեցատոմանի սպիրտ: Քաղցրահամ, անգույն բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 97,7°C (կայուն ձևը): Պարունակվում է ծով. ջրիմուռներում, արոսիի, սալորենու, խնձորենու պտուղներում: Կիրառվում է ասկորբինաթթվի արտադր-յան մեջ, կոսմետիկայում: Փոխարինում է շաքարին՝ շաքարախտով հիվանդների համար, միզամուղ է:

ՍՈՐԲՈՆ (Sorbonne), **Փարիզի համալսարան**, Ֆրանսիայի և աշխարհի խոշորագույն ուս. և գիտ. կենտրոններից: Հիմնադրվել է 1215-ին՝ 4 ֆակ-ով: 1257-ին Փարիզի լատ. թաղամասում հիմնադրվել է Սորբոն քոլեջը՝ աստվածաբան, Լյուդովիկոս IX-ի խոստովանահայր Ռոբեր դը Սորբոնի նախաձեռնությամբ (այստեղից՝ անվանումը): 1554-ին այն միացել է Փարիզի համալսարանին՝ որպես աստվածաբանության ֆակ.: 1793-ին Կոնվենտի որոշմամբ փակվել է, 1806-ին՝ վերաբացվել: 1969-ին Ս. բաժանվել է 13 ինքնուրույն համալսարանների՝ իրենց համարներով և անուններով: Ս. ունի ավելի քան 100 ԳՀ ինստ. և կենտրոն, բարձրագույն դպրոց, 35 գրադարան ևն: 2015-ին ուներ ավելի քան 300 հզ. ուսանող:

1968–84-ին Ս-ի կազմում է եղել *Փարիզի արևելյան լեզուների և քաղաքակրթությունների պետական ինստիտուտը*:

ՍՈՐԳՈ (Sorghum), դաշտավուկազգիների ընտանիքի միամյա կամ բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 50 մշակովի և վայրաճ տեսակ, ՀՀ-ում՝ 2 (տեխ., և մոլաոտրզո (Ջոնսոնի խոտ)): Առաջինը մշակվում է կանաչ զանգված և ավել ստանալու համար, 2-րդը տարածված մոլախոտ է: Մշակության մեջ (Արարատյան դաշտ) տարածված է Ս. սովորականը: Հացահատիկ., տեխ. և կերաբույս է:

ՍՈՐԵԼ (Sorel) Շառլ դը Սուվինյի (մոտ 1602–1674), ֆրանսիացի գրող: Հեղինակ է «Ֆրանսիոնի կատակերգական կենսագրությունը» (գիրք 1–12, 1623–33) խաբեբայապատում վեպի ոճով գրքերի շարքի, որտեղ շարունակել է Ֆ. Ռաբլեի գրոտեսկ. ռեալիզմի ավանդույթները, նաև «Խենթ հովիվը» (1627–28) վեպ-պարոդիայի:

ՍՈՐԵՍԿՈՒ (Sorescu) Մարին (1936–1996), ռումին գրող: Հեղինակ է «Միայնակ՝ բանաստեղծների շրջանում» (1963) պարոդիաների, «Դոն Կիխոտի պատանեկությունը» (1968), «Ամպեր» (1975) փիլ-երգիծ. բանաստեղծությունների ժող-ների, «Հորձանուտ» (1974) և այլ դրամաների:

ՍՈՐՈԿԻՆ Իվան Լուկիչ (1884–1918), Ռուսաստանի քաղաքաց. պատերազմի (1917–22) մասնակից, Հս. Կովկասում խորհրդ. զորքերի գլխ. հրամ. (1918-ի օգոստ–սեպտ.), ապա՝ 11-րդ բանակի հրամ.: 1918-ին հակամարտության մեջ է մտել Հս-կովկաս. Խորհրդ. Հանրապետության ղեկավարության հետ: Հս. Կովկասի խորհուրդների արտակարգ 2-րդ Համագումարը Ս-ի գործունեությունը հայտարարել է օրենքից դուրս: Բանտարկվել է Ստավրոպոլում. այդտեղ էլ գնդակահարվել:

ՍՈՐՈԿԻՆ Պիտիրիմ Ալեքսանդրովիչ (1889–1968), ռուս ամերիկ. սոցիոլոգ: Աջ էսէռների առաջնորդ: Ս. պատմ. ընթացքը դիտարկել է իբրև մշակույթի հիմն. տիպերի շրջապտույտների հերթափոխ: Սոցիալ. շերտավորման և սոցիալ. շարժունության տեսությունների սկզբնավորողներից է: Աշխ-ները վերաբերում են սոցիալ., իրավունքի, արվ-ի խնդիրներին («Սոցիոլոգիայի համակարգ», հ. 1–2, 1920, ևն):

ՍՈՐՈՍ (Soros) Ջորջ (ծ. 1930), ամերիկացի ֆինանսիստ, բարեգործ: Բաց հաս-յան տեսության կողմնակից: Ստեղծել է բարեգործ. կազմ-յունների ցանց (Բաց հաս-յան ինստ-ը գործում է նաև ՀՀ-ում), որոնք հայտնի են «Սորոսի հիմնադրամ» անվամբ:

ՍՈՐՍԱ (Sorsa) Կալևի (1930–2004), ֆինլանդիայի վարչապետ՝ 1972–75, 1977–79 և 1982–87-ին, միաժամանակ՝ փոխվարչապետ և ԱԳ նախարար՝ 1972, 1975–76, 1987–89-ին: 1975–87-ին, 1987–89-ին Ս-դ. կուս-յան նախագահ:

ՍՈՐՏ ԲՈՒՅՍԵՐԻ, մշակովի բույսերի ամբողջություն, որն ստեղծվել է ընտրասերման արդյունքում և օժտված է ժառանգաբար փոխանցվող հատկանիշներով: Աշակաբույսերի դասակարգման ցածրագույն միավորն է:

ՍՈՐՏԱՇԲՋԱՆԱՅԻՄ, մշակաբույսերի բարձր բերքատու, արտադրանքի որակով ու ցուցանիշներով արժեքավոր սորտերի և հիբրիդների ընտրությունն ու ներդրումը որոշակի բնակլիմ. գոտու տնտ-յուններում:

ՍՈՐՏԱՓՈՐՁԱՐԿՈՒՄ, մշակաբույսերի սորտերի և հիբրիդների ուսումնասիրություն և գնահատում նույն պայմաններում՝ չափորոշիչի հետ համեմատելով: Կարող է լինել կայանային, պետ., մրցութ., ընդլայնված: Պետ. Ս-ման ընթացքում աչքի ընկած սորտերն ու հիբրիդները հաստատում է երկրի կառ-յունը:

ՍՈՐՈՒԿ (Camelina), կաղամբազգիների ընտանիքի միամյա և երկամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 10 (12) տեսակ, ՀՀ-ում՝ 4 (փուխր, սպիտակածաղիկ, մանրապտուղ, մերկ)՝ Շիրակի, Սյունիքի,

Գեղարքունիքի, Կոտայքի, Տավուշի և այլ մարզերում: Մերմերը պարունակում են 25–46 % ճարպայուղ, օգտագործում են տեխ. նպատակներով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ, վճարովի աշխատողների նյութ. ապահովության համակարգ, որը սահմանվում է անաշխատունակության, ծերության և օրենքով նախատեսված այլ դեպքերում (օր.՝ առողջարանաառողջավայր. բուժում, հանգստի կազմակերպում, բուժ. սնունդ, մայրության և մանկության ապահովություն): ՀՀ–ում 2012–ին ներդրված սոցիալ. փաթեթի շրջանակներում նույնպես նախատեսված են Ս. ա–յան բաղադրիչներ. հատկացվող դրամ. միջոցների հաշվին հիպոթեք. վարկի, ուսման վարձի մարման, զբոսաշրջության–հանգստի հնարավորություն:

Իրականացվում է ձեռն–ների, հիմնարկների, կազմ–յունների պարտադիր վճարումներից և բանվորների, ծառայողների, նրանց ընտանիքների նյութ. ապահովության համար պետբյուջեից կատարվող լրավճարներից:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ, պետության կողմից իրագործվող կամ պաշտպանվող սոցիալ–տնտ. միջոցառումների համակարգ, որը սահմանվում է քաղաքացիների ծերության և անաշխատունակության դեպքերում, մայրության և մանկության ապահովության, աշխատանկության նախաապահովման և վերականգնման համար: ՀՀ–ում Սահմանադրությամբ նախատեսված համակարգ է:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽԱՎ, հաս–յան սոցիալ. կառուցվածքի տարրերից, սոցիալ. խմբի տեսակ: Ս. խ–երը բնորոշվում են տարբեր չափանիշներով՝ որպես դասակարգերի միջև կամ նրանց ներսում որոշ առանձնահատկություններով օժտված սոցիալ. խմբեր: Ս. խ. կարող է լինել փակ, մեկուսացված (աղանդ, դաս ևն) կամ սկզբունքորեն բաց (ծառայողներ ևն):

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱ, գիտ–յուն, որն ուսումնասիրում է հաս–յան և բնության փոխազդեցության պայմաններն ու օրինաչափությունները: Ստորաբաժանվում է տնտ., ժողովրդագր., ուրբանիստիկ., ապագայաբան. և իրավ. էկոլոգիայի:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐ, որևէ հատկանիշով (տարածք., մշակութ., տնտ., ժողովրդագր., ցեղ. ևն) առանձնացված մարդկանց ընդհանրություն: Տարբերում են մեծ (հաս. դասակարգեր, ազգեր, էթնիկ ընդհանրություններ, սոցիալ. շերտեր ևն) ու փոքր (ընտանիք, արտադր. կոլեկտիվ, դպրոց. դասարան ևն), կազմակերպված (պաշտոն.) ու ինքնուրույն (ոչ ֆորմալ), բաց և փակ (բանակ. ստորաբաժանում, սխյուռք ևն), մշտ. ու ժամանակավոր Ս. խ.:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԾՐԱՏԻՊ, սոցիալ. երևույթի կամ օբյեկտի մասին ամրագնդված պատկեր կամ պատկերացում: Ս. կ. արտահայտում է մարդու սովոր. վերաբերմունքը որևէ երևույթի նկատմամբ, որը ձևավորվում է սոցիալ. պայմանների ազդեցությամբ: Հաճախ գործածվում է որպես հնացած և կանխակալ պատկերացումների հոմանիշ, որոնք կապված են նախապաշարմունքների հետ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԱ, բժշկագիտ–յան բնագավառ. ուսումնասիրում է սոցիալ. գործոնների ազդեցությունը բնակչության առողջության վրա:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, հիվանդություններ, որոնց առաջացումն ու տարածումը պայմանավորված են սոցիալ–տնտ. անբարենպաստ պայմաններով: Ս. հ. են տուբերկուլոզը, վեներ. հիվանդությունները, ալկոհոլամոլությունը, թմրամոլությունը, ավիտամինոզները, անբավարար սնուցման հետ կապված այլ և մասնագիտ. որոշ հիվանդություններ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, հոգեբ–յան բնագավառ. ուսումնասիրում է սոցիալ. խմբերում մարդկանց վարքի և գործունեության օրինաչափությունները և այդ խմբերի հոգեբ. բնութագրերը: Որպես ինքնուրույն գիտակարգ ծագել է XX դ–ի սկզբին (Մաք–Դուգալի և Է. Ռոսի աշխ–ները, 1908, ԱՄՆ):

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ, մարդու գոյության և գործունեության համար անհրաժեշտ հաս., նյութ. և հոգևոր պայմաններ: Միջավայրը (մակրոմիջավայրը) լայն առումով ընդգրկում է տնտ–յունը, հաս. ինստ–ները, հաս. գիտակցությունը և մշակույթը: Ս. մ. նեղ առումով (միկրոմիջավայր) նեղ–րառում է մարդու անմիջական շրջապատը՝ ընտանիքը, աշխ., ուս. և այլ խմբեր:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄ, սոցիոլոգիայի բնագավառ, սոցիալ. հասկացություն, որով նշանակվում են հաս–յան կառուցվածքը և նրա առանձին շերտերը, սոցիալ. տարանջատման համակարգը: Կրթության, կենցաղ. պայմանների, զբաղմունքների, եկամուտների, հոգեբ–յան, կրոնի և այլ հատկանիշների հիման վրա Ս. շ–ման տեսություններում հաս–յունը բաժանվում է «բարձր», «միջին» և «ցածր» դասերի ու շերտերի (ստրատների):

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ, վիճակագրության ճյուղ. ուսումնասիրում է որոշակի ժամանակահատվածում հաս–յան սոցիալ. կյանքում տեղի ունեցող զանգված. փոփոխությունները:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ, իրավ. նորմեր, որոնք կարգավորում են վարձու աշխատողների կարգավիճակը և սոցիալ. ապահովության հարցերը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՅԻՄ (լատ.՝ socialis – հասարակական), անհատի՝ գիտելիքների, նորմերի և արժեքների որոշակի համակարգի յուրացման գործընթաց, որը հնարավորություն է տալիս նրան գործել որպես հաս–յան լիիրավ անդամ: Ս. ներառում է ինչպես անհատի վրա նպատակաուղղված ազդեցություն (դաստիարակություն), այնպես էլ տարերային, ինքնուրույն գործընթացները, որոնք ազդում են վերջինիս ձևավորման վրա: Ս. ուսումնասիրում են փիլ–յունը, հոգեբ–յունը, սոցիալ. հոգեբ–յունը, սոցիոլոգիան, պատմությունը և ազգագրությունը, մանկավարժությունը, աստվածաբանությունը:

«ՍՈՑԻԱԼ–ԴԵՄՈԿՐԱՏ» (“Социал-демократ”), 1. ռուս. գր., քաղ., տեղեկատվ. պարբ. (1890–92, Լոնդոն, Ժնև): «Աշխատանքի ազատություն» խմբակի հրտ–յուն: 2. Ռուս. անլեգալ թերթ, ՌՍԴԲԿ ԿԿ (փաստացի՝ մենշևիկների) պաշտոնաթերթ (1906, Ս. Պետերբուրգ): 3. Ռուս. անլեգալ թերթ (1908–17, Վիլնո, Ս. Պետերբուրգ, Փարիզ, Ժնև), ՌՍԴԲԿ–ի կենտր. պաշտոնաթերթը: 1912–ից՝ բոլշևիկյան խմբակցության պաշտոնաթերթ: 4. Ռուս. շաբաթաթերթ, ՌՍԴԲ(բ)Կ Սոսկվայի շրջ. վարչության պաշտոնաթերթ (1917–18). միավորվել է *«Պրավդա»*–ի հետ:

«ՍՈՑԻԱԼ–ԴԵՄՈԿՐԱՏ», բոլշևիկյան շաբաթաթերթ (1917, Բաքու): ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի պաշտոնաթերթ: Խմբ.՝ Ստեփան Շահումյան:

ՍՈՑԻԱԼ–ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՍԴՀԿ), **Հնչակյան կուսակցություն**, հայ քաղ. կուս–յուն: Հիմնադրվել է 1887–ին Ժնևում: Հիմնադիրներ՝ Ավետիս և Սարո ***Նազարբեկներ***, Գաբրիել ***Կաֆյան***, Ռուբեն ***Խանազատ*** և ուր.: Հրատարակել է ***«Հնչակ»*** պաշտոնաթերթը (այստեղից էլ՝ անվանումը): Կուս–յան մտտակա նպատակը համազգ. ապստամբությամբ թուրք. լծից Ա.րմ. Հայաստանի ազատագրումն էր, հայկ. հողերի միավորման միջոցով անկախ հանրապետության ստեղծումը, հեռակա նպատակը՝ սոցիալիզմը: 1896–ին ՍԴՀԿ–ից անջատվել և ձևավորվել է առանձին՝ ***Վերակազմյալ հնչակյաններ*** կուս–յունը:

1908–ի երիտթուրք. հեղաշրջումից հետո, ելնելով նոր քաղ. իրավիճակից, հնչակյանները որդեգրել են երիտթուրքերի դեմ պայքարի սահմանադր. ուղին, հրաժարվել են զինված պայքարի և անկախ Հայաստանի գաղափարից: Երիտթուրքերը ջախջախել են Թուրքիայում գործող հնչակյան կազմ–յունները, ղեկ. գործիչներից 20–ին (***Փարամազ*** և ուր.) 1915–ին կախաղան հանել Կ. Պոլսում: 1920–ի օգոստ–ին հնչակյանների ջանքերով հռչակվել է Կիլիկիայի անկախությունը, կազմավորվել հայկ. կառ–յուն Մ. ***Տամատյանի*** ղեկավարությամբ:

Հայաստանում խորհրդ. իշխանություն հաստատվելուց հետո ԽՍՀՄ տարածքում հնչակյան կազմ–յունները լուծարվել են, մի մասը մտել է ՌԿ(բ)Կ–ի մեջ: Ներկայում լույս են տեսնում ՍԴՀԿ կենտր. վարչության «Արարատ» պաշտոնաթերթը (Բեյրութ), կուս–յան Ա.րմ. Ամերիկայի կազմ–յան «Մասիս» շաբաթաթերթը (Փասադենա), «Ջահակիր» պարբ–ը (Կահիրե) ևն: 1991–ից Հայաստանում գործում է Հայաստանի ՍԴՀԿ:

ՍՈՑԻԱԼ–ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, **Սպեցիֆիկներ**, սոցիալ–ազգայն. կազմ–յուն: Ձևավորվել է 1903–ի վերջին Ժնևում: Այնուհետև տեղափոխվել է Կովկաս և գործել մինչև Խորհրդ. Հայաստանի կազմավորումը: Գաղափարախոսներն էին Բ. Իշխանյանը, Ա. Ռուբենին, Ղ. և Ն. Տեր–Ղազարյանները, Տ. Իսախանյանը, Ե. Պալյանը, Գ. Կուզիկյանը (Եսալեմ), Դ. Տեր–Դանիելյանը (Դավիթ Անանուն) և ուր.: Իրենց հայտարարել են հայ պրոլետարիատի միակ ներկայացուցիչը: Ազգ. հարցում քարոզել են մշակութազգ. ինքնավարություն:

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐՈՍ, աշխ. ակնառու նվաճումների համար ԽՍՀՄ–ում տրված բարձրագույն պատվ. կոչում 1938–91–ին: Ս. ա. հ–ներին տրվել են Լենինի շքանշան, «Մուրճ և մանգաղ» մեդալ և ԽՍՀՄ ԳԽ նախագահության շնորհագիր: ՀԽՍՀ–ում Ս. ա. հ–ի կոչմանն արժանացել է 218 քաղաքացի (վերջինը՝ 1984–ին), այդ թվում՝ 40 կին, կրկնակի հերոսի կոչման՝ Վիկտոր ***Համբարձումյանը***, Արտեմ ***Միկոյանը***, Սամվել ***Քոչարյանը***: Ս. ա. հ–ի կոչումը սահմանելուց առաջ միութ. հանրապետություններում, այդ թվում՝ ՀԽՍՀ–ում, տրվել է Աշխ–ի հերոսի կոչում:

«ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ», ՀԽՍՀ հողժողկոմատի,

կոլտնտկենտրոնի և հայջրտնտ-յան պաշտոնաթերթ (1931–35, Երևան): Խմբ.՝ Վախթանգ Անանյան: Հաջորդել է *«Մաճկալ»*-ին:

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ, սոց. և ս-դ. կուս-յունների միջազգ. միավորում: Հիմնադրվել է 1951-ին՝ «Կոմինտերն»-ի կենտրոնի հիմքի վրա: 2009-ին միավորել է 126 երկրի՝ 156 կուս-յուններ և կազմ-յուններ:

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵԱԼԻԶՄ, *սոցռեալիզմ*, տերմին, որը գործածել են խորհրդ. գրականագիտ-յան և արվեստաբանության մեջ 1930-ական թթ-ից: Արվեստագետից «պահանջում էր սոցիալիստական իրականության և մարդկային նոր հարաբերությունների ճշմարտացի արտացոլում, սոցիալիզմի ոգով աշխատավորության դաստիարակում» ևն: «Ռեալիզմ» գեղագիտ. հասկացությունը միավորվել էր «սոցիալիստական» սահմանման հետ, որտեղ գրկ-ը և արվ-ը ենթարկվում էին ժամանակի գաղափարախոսությանը: Ս. ռ-ի հիմն. կողմնորոշիչը կուսակցականությունն էր, սոց. գաղափարախոսությունը: Արհեստականորեն ընդհատվել է գրկ-յան և արվ-ի զարգացման ընթացքը, երկար տարիներ ժողդ-ի հոգևոր կյանքից մեկուսացվել են տաղանդավոր արվեստագետներ (Ա. Ա. Ախմատովա, Դ. Դ. Շոստակովիչ, Ս. Մ. Էյզենշտեյն, Ե. Չարենց, Ա. Բակունց, Վ. Թոթովենց, Ե. Քոչար և ուր.): Աստիճանաբար մեծ տեղ է հատկացվել միջակ, հարմարվողական ստեղծագործություններին, որոնք գովերգել են սոց. շին-յունը, կոլտնտ. շարժումը, արտադր. հաջողությունները: 1980-ական թթ-ի սկզբներին Ս. ռ. սկզբունքորեն կորցրել է իր նշանակությունը: Արվ-ում ևս 1920-ական թթ-ին և հետագա տասնամյակներին արտահայտվել են Ս. ռ-ի սկզբունքները: Այդ ուղղությանը տուրք են տվել Կ. Ս. Ստանիսլավսկին, Վ. Է. Մեյերհոլդը, Վ. Աճեմյանը, Ա. Գուլակյանը՝ թատերարվ-ում, Ս. Մ. Էյզենշտեյնը, Վ. Ի. Պուդովկինը, Ա. Պ. Դովժենկոն, Հ. Բեկնազարյանը, Ս. Կևորկովը՝ կինոարվ-ում, Ս. Ս. Պրոկոֆևը, Դ. Դ. Շոստակովիչը, Ա. Խաչատրյանը՝ երաժշտաարվ-ում, Վ. Մուխինան, Ս. Տ. Կոնյոնկովը, Բ. Վ. Յոհաննսոնը, Մ. Սարյանը, Հ. Կոջոյանը, Դ. Նալբանդյանը՝ կերպարվ-ում:

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ուսումնասիրում է առանձին երկրներում, տարածաշրջաններում, շրջաններում և այլուր հաս-յան տարածք. կազմակերպման հարցերը: Ստորաբաժանվում է՝ տնտ. աշխարհագրության, սոցիալ-աշխարհագրության և հատուկ ճյուղի՝ բնակչության աշխարհագրության: Ս-տ. ա. կազմում է հաս. աշխարհագրության կորիզը՝ բոլոր աշխարհագր. գիտակարգերի և ուղղությունների ամբողջությունը՝ զբաղվելով հաս. երևույթների ուսումնասիրությամբ:

ՍՈՑԻՈԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գիտակարգ, որը զարգացել է լեզվաբ-յան, սոցիոլոգիայի, սոցիալ. հոգեբ-յան և ազգագրության հատման ճանապարհին: Ս. ուսումնասիրում է լեզվի սոցիալ. բնույթի, նրա հաս. գործառույթների և լեզվի վրա սոցիալ. գործոնների ազդեցության խնդիրները:

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ, (< լատ. societas – հասարակություն և ...*լոգիա*), գիտ-յուն հաս-յան՝ որպես ամբողջ. համակարգի մասին, ինչպես նաև սոցիալ. ինստ-ներ-ի, գործընթացների, սոցիալ. խմբերի և հանրույթների, անհատի և հաս-յան հարաբերությունների, մարդկանց զանգված. վարքի օրինաչափությունների մասին: Հաս. կյանքի մեկնաբանության փորձերը ծագել են դեռևս անտիկ շրջանում (Պլատոն, Արիստոտել և ուր.), շարունակվել պատմության փիլ-յան մեջ: XIX դ-ի կեսերին Օ. Կոնտը փորձել է ստեղծել հաս-յան մասին «դրական գիտություն» (ներմուծել է նաև հասկացությունը): XIX–XX դդ-ի սկզբին Ս-ում առանձնացել են աշխարհագր. դպրոցը, ժողովրդագր. դպրոցը, կենսբ. ուղղությունը ևն: Մեծանուն սոցիոլոգների (Ֆ. Թենիս, Գ. Զիմել, Է. Դյուրքեյմ, Վ. Պարետո, Մ. Վեբեր, Թ. Վեբլեն) հայեցակարգերը, որոնք հիմնվում էին *պոզիտիվիզմի* փիլ-յան նորկանտականության, կյանքի փիլ-յան ևնի վրա, մեծ ավանդ են ունեցել Ս-ի զարգացման հարցում: 1920-ական թթ-ին Ս-ում զարգացել են տարբեր մեթոդներ, փորձն. հետազոտությունների հնարներ և ընթացակարգեր, կատարվել է Ս-ի մասնագիտացում (ընտանիքի, քաղաքի, իրավունքի ևն Ս., շուրջ 40 ոլորտ):

ՍՈՑԻՈԿԵՆՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, միջգիտաճյուղ. գիտ. ուղղություն. ուսումնասիրում է մարդու և կենդանիների սոցիալ. վարքի կենսբ. հիմունքները՝ օգտագործելով էթոլոգիայի, գենետիկայի, էկոլոգիայի, էվոլյուցիոն տեսության, սոցիալ. հոգեբ-յան, ազգագրության տվյալները: Զևավորվել է 1970-ական թթ-ին (հիմնականում՝ ԱՄՆ-ում՝ Է. Օ. Ուիլսոն, Դ. Բերեշ, Չ. Լամսդեն և ուր.): Ս. հետամտում է կենդանիների մոտ մարդուն յուրահատուկ վարքի ձևերի նախադրյալների հայտնաբերման հնարավորություններ, ձգտում է հաստատել դրանցում մարդու և կենդանիների տարատեսակությունները:

ՍՈՑԻՈՄԵՏՐԻԱ (< լատ. societas – հասարակություն, ընկերություն և ...*մետրիա*), սոցիալ. հոգեբ-յան ճյուղ. ուսումնասիրում է միջանձնային հարաբերությունները՝ զգալի ուշադրություն դարձնելով դրանց քանակ. չափանիշներին: Հասկացությունը ծագել է XIX դ-ում: Յ. Մորենոն (ԱՄՆ) մշակել է միջանձնային հարաբերությունների վերլուծության փորձարար. մեթոդներ, Ս. ներմուծել է «սոցիոմետրիկ հեղափոխության» միջոցով հաս-յունը «բուժելու» պատկերացում: Ս. ժամանակակից սոցիալ. հոգեբ-յան մեջ նշանակալից է միջանձնային հարաբերությունների ուսումնասիրության մեթոդների ամբողջություն, որոնք կիրառվում են փոքր խմբերի ուսումնասիրության ժամանակ կառավարման բարելավման, ինչպես նաև բուժ. նպատակներով:

ՍՈՈՒՆ (Soane, Soan) սըր Ջոն (1753–1837), անգլիացի ճարտ.: Դաս. ոճով վերակառուցել է Անգլ. բանկի շենքը (1792–1833) Լոնդոնում: Այլ կառույցներից են Դալիջի պատկերասրահի շենքը (1811–14) և Ս-ի սեփ. տունը (Լոնդոնում), որտեղ պահվում է նրա գեղ. հավաքածուն (1812, 1823–24, 1833-ից՝ թանգարան):

ՍՈՓԵՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, *սոֆիստիկա* (հուն.՝ sophistike), 1. դատողություն, որի հիմքում տրամաբ-յան օրենքների միտումնավոր խախտումներն են (*սոփեստությունների* կիրառում): 2. Հին հույն սոփեստների ուսմունքը (մ. թ. ա. V–IV դդ.):

ՍՈՓԵՍՏՆԵՐ (հուն.՝ sophistes – հմուտ, իմաստուն, հետագայում՝ նաև իմաստակ), 1. մ. թ. ա. V–IV դդ-ի հույն փիլ-ները՝ իմաստության և պերճախոսության ուսուցիչները: Այսպես կոչված ավագ Ս-ից էին Պրոտագորասը, Գորգիասը, Հիպիասը, Պրոդիկոսը, Անտիփոնը, Քսենիադեսը և ուր., կրտսեր Ս-ից՝ Կրիտիասը, Ալկիդամասը, Էվթիդեմոսը, Լիկովտոնը, Թրասիմաքոսը, Հիպոդամոսը, Պոլոսը և ուր.: Ս. փիլ. հետաքրքրությունների առանցքը բնափիլ-յունից փոխադրել են բարոյականության (ավանդ. բարոյականության քննադատություն, իմացաբանության սկեպտիկ տեսություն ևն), քաղ-յան, հռետորության, առհասարակ իմացաբանության հարցերի ոլորտ: Ս-ի քննադատությամբ են հանդես եկել Սոկրատեսը և Պլատոնը: 2. II–V դդ-ի արհեստավարժ հռետորներ, որոնք մշակել են հինհուն. հռետորության դասական օրինակները:

ՍՈՓԵՍՏՈՒԹՅՈՒՆ, *սոֆիզմ* (հուն.՝ sophisma – հմտություն, խորամանկություն, հորինվածք), կարծեցյալ ապացուցում, որտեղ հիմնավորվում է թվացյալ եզրակացությունը: Ս. ծագում է զուտ սուբյեկտիվ պատկերացումներով, որոնց հիմքում առկա են տրամաբ. և իմաստաբան. վերլուծության թերություններ:

ՍՈՖԹԲՈԼ, (անգլ.՝ softball), խմբային մարզախաղ գնդակով (զանգվածը՝ 180 *գ*), *բեյսբոլի* տարատեսակ, ծագել է ԱՄՆ-ում, կանոնները սահմանվել են 1906-ին: Ս-ի միջազգ. ֆեդերացիան (IFS, հիմն.՝ 1952) ընդգրկում է 125 երկիր (2010): Կանանց աշխարհի առաջնություններն անցկացվում են 1965-ից, տղամարդկանցը՝ 1966-ից, օլիմպ. խաղերի ծրագրում էր (1996–2008):

ՍՈՖԻԱ, (հուն.՝ sophia – գիտելիք, իմաստություն), անտիկ և միջնադար. փիլ-յան հասկացություն, որը կապված է իրերի իմաստ. օժտվածության և կարգավորվածության պատկերացումների հետ: Ս-ի մինչփիլ. կիրառությունը խելամիտ կարողությունն է, որը դրսևորվում է նպատակադիր ստեղծագործության մեջ (*Հոմերոս*), Ս. «էության, պատճառների և ակունքների մասին գիտելիք է» (*Արիստոտել*): Հուդայականության և քրիստոնեության մեջ՝ Ս. Աստծու իմաստության մարմնավորումն է: Ս-ի՝ որպես «աստվածային իմաստության» պատկերացումները հատկապես զարգացել են Բյուզանդիայում և Հին Ռուսիայում:

ՍՈՖԻԱ, *Բուլղարիայի* մայրաքաղաքը՝ 1879-ից: Համանուն մարզի վարչ. կենտրոնը, ինքնուրույն վմմ: Բն.՝ 1,2 մլն (2010): Տրանսպորտ. հանգույց է, ունի օդանավակայան: Ս-ում է Բուլղարիայի ԳԱ-ն, կան բուհեր, թատրոններ, ազգ. և քաղաքի պատկերասրահ, հնագիտ. թանգարան: Հիմնադրվել է մ. թ. I դ-ում: 809-ին Սրեդեց անունով մտել է Բուլղ. առաջին թագավորության կազմի մեջ: XIV դ-ի վերջից կոչվել է Ս. (Սբ Սոֆիա եկեղեցու) անունով: 1382–1878-ին Օսմ. կայսրության գերիշխանության տակ էր: Պատմաճարտ. հուշարձաններից են Սբ Սոֆիայի եկեղեցին (VI դ.), թուրք. մզկիթը (XVI դ.), Ալեքսանդր Նևսկու տաճար-հուշարձանը (1904–12), ժամանակակից շինություններ, բնակելի շենքերի համալիրներ ևն:

XVII դ-ում Ս-ում եղել է կազմակերպված հայկ. համայնք, հայերի թիվն ստվարացել է ԱՀՊ-ից, ապա՝ 1991-ից հետո: Ս-ում գործել են հայ ազգ. կուսյուններ, դպրոցներ, միություններ, թատերախմբեր ևն, լույս են տեսել շուրջ 40

անուն պարբ-ներ, որոնք տպագրվել են հայկ. տպարաններում:

ՍՈՖԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ Կլիմենտ Օրխիդսկու անվան, հիմնադրվել է 1888–ին Բուլղարիայում, 1904–ից՝ համալսարան: 1947–52–ին վերակազմավորվել է: 2015–ին ուներ ավելի քան 25 հզ. ուսանող:

ՍՈՖԻՅԱՆ Արտեմ Պետրոսի (1929–1986), մեխանիկոս: Տեխ. գիտ. դ–ր (1980), պրոֆ. (1981): Առաջինն է մշակել թրթռուրավոր մեքենաների ընթացային համակարգի և կրող մակերևույթի փոխազդեցության տեսությունը: Ստեղծել է մի շարք ռազմ. մեքենաներ:

ՍՈՖՅԱ ԱԼԵՔՍԵԵՎՆԱ (1657–1704), արքայադուստր, Ռուսաստանի կառավարչուհի (1682–89), ***Ալեքսեյ Միխայլովիչ*** ցարի դուստրը: Ռեգենտ՝ 2 ցարերի՝ անչափահաս եղբայրներ Իվան V Ալեքսեևիչի և ***Պետրոս I***-ի օրոք: Հեռվել է իշխաններ Վ. Վ. ***Գոլիցինի*** (1643–1714) և Ֆ. Լ. Շոկալվիտի վրա: Ս. Ա.-ի կառ-յունը Ռեչ Պոսպոլիտայի հետ կնքել է «Հավիտյան խաղաղությունը» (1686), Չինաստանի հետ՝ Ներչինսկի պայմանագիրը (1689), նախաձեռնել է 1687 և 1689–ի Ղրիմի արշավանքները: Ս. Ա.-ին իշխանությունից հեռացրել է Պետրոս I-ը, բանտարկվել է Նովոդևիչի վանքում: Ստրելեցների ապստամբությունից (1698) հետո ձեռնադրվել է միանձնուհի:

ՍՈՖՈԿԼԵՍ (Sophocles, մ. թ. ա. 497/496–մ. թ. ա. 406), հույն դրամատուրգ: Հեղինակ է 120–ից ավելի պիեսների, որոնցից մեզ են հասել պատառիկներ և ամբողջ. 7 ողբերգություն՝ «Այաքս», «Անտիգոնե», «Էդիպոս արքա», «Տրախինուհիներ», «Էլեկտրա», «Ֆիլոկտետես», «Էդիպոսը Կոլոնոսում», որտեղ պատկերել է ճակատագրի դեմ մարտնչող մարդու ուժն ու արդարացիությունը, փառաբանել ազատատենչությունը: Ս-ի ողբերգությունների մոտիվներով ստեղծվել են երաժշտագործիք. երկեր, օպերաներ, նկարահանվել կինոնկարներ: Հայ. թարգմանվել (Ա. Բագրատունի, Տ. Հովհաննիսյան, Հ. Համբարձումյան և ուր.) և հայ բեմում բեմադրվել են Ս-ի ողբերգություններից:

ՍՈՖՈՐԱ. (Sophora), ***բակլազգիների*** (թիթեռնածաղկավորներ) ընտանիքի ծառերի և թփերի ցեղ: Հայտնի է 50 տեսակ՝ արևադարձ. և մերձարևադարձ. շրջաններում, հազվադեպ՝ բարեխառն գոտում: Դեղաբույս է, գեղազարդիչ, մեղրատու, մոլախոտ:

ՍՈՖՐՈՆԻՈՒՍ (մոտ 560–638), քրիստ. աստվածաբան, սուրբ, Երուսաղեմի պատրիարք՝ 634–ից: ***Մաքսիմոս Խոստովանահոր*** հետ միաբարականների դեմ պայքարում պնդել է Հիսուս Քրիստոսի երկու բնության (աստված. և մարդկային) և գործողությունների (էներգիաներ) մասին ուսմունքը:

ՍՈՖՐՈՆՈՎ Անատոլի Վլադիմիրովիչ (1911–1990), ռուս գրող: Սոց. աշխ. հերոս (1981): 1953–86–ին՝ ***«Օգոնյոկ»*** (ռուս.) ամսագրի գլխ. խմբ.: Հեղինակ է «Սոսկովյան բնավորություն» (1948) և այլ դրամաների, «Խոհարարուհին» (1959) կատակերգության, «Ժամանակների խորքը» (մաս 1–6, 1978–83) չափածո վեպի, նաև քնարերգ., հրապարակախոս. գործերի: Հայ. հրատարակվել է «Ոչինչ չի մոռացվում» (1978) բանաստեղծությունների ժող-ը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1948, 1949):

ՍՈՖՐՈՆՈՎ Եվգենի Իվանովիչ (ծ. 1946), ռուս նկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (1987): 1975–ից (ընդհատումներով)՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ., 1984–88–ին՝ դրամատիկ., 1994–99–ին՝ օպերայի և բալետի թատրոնների գլխ. նկարիչ: Ձևավորել է (Վ. Շեքսպիրի «Կորիոլան» (1978), «Հացավան»՝ ըստ Ն. Զարյանի, 1980, երկուսն էլ՝ Գ. Սունդուկյանի անվ. թատրոն), Գ. Ի. Գորինի «Մոռանալ Հերոստրատին» (1977, ԵԴԹ), Տ. Չուխաճյանի «Արշակ Բ» (1984), Ռ. Լեոնկավալլոյի «Պայացներ» (1996, երկուսն էլ՝ ԵՕԲԹ) և այլ բեմադրությունների:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1981), ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (1998):

ՍՈՖՈՒԼԻՍ (Sophules, Sofouilis) Թեմիստոկլիս (1860–1949), Հունաստանի վարչապետ՝ 1924, 1945–46, 1947–49–ին, 1926–28–ին՝ խորհրդարանի նախագահ, 1935–ից՝ Լիբերալ կուս-յան առաջնորդ: 1907 և 1912–ին ղեկավարել է Սամոս կղզու հակաթուրք. ապստամբությունը:

ՍՊԱԶՄ (< հուն. spao, spazmos – ձգել), մկանների կամ մկանախմբերի ոչ կամային տոնիկ կծկումներ: Տարբերում են կմախք. մկանների (վերջույթների), հարթ մկանների՝ արյունատար անոթների, բրոնխների, կերակրափողի, աղիների ևնի Ս.:

ՍՊԱԶՄՈՖԻԼԻԱ (< ***սպազմ*** և fileo – սեր, հակում), **մանկական տետանիա**, վաղմանկ. տարիքի երեխաների հիվանդություն՝ պայմանավորված օրգանիզմում կալցիումի փոխանակության խանգարմամբ, և բնորոշվում է նյարդ. համակարգի գրգռողականության բարձրացմամբ ու ջղաձգություններ առաջացնելու հակումով: Պատճառն օրգանիզմում D վիտամինի անբավարարությունն է (տես ***Ռախիտ***) և հարվահանագեղձերի գործունեության խանգարումը: Հիվանդանում են մինչև 2 տարեկան երեխաները: Տարբերում են Ս-ի ակնհայտ և գաղտնի ձևեր:

ՍՊԱԼԱՆՅԱՆԻ (Spallanzani) Լաձարո (1729–1799), իտալացի բնագետ: Առաջինն է ապացուցել մանրէների ինքնածնման անհնարինությունը, իրականացրել երկկենցաղների և կաթնասունների արհեստ. բեղմնավորում:

ՍՊԱՀԱՆ, Իսպահան, ք. Իրանի կենտր. մասում՝ Զայենդերուդ գետի ափին: Համանուն օստանի վարչ. և երկրի 2–րդ տնտ. կենտրոնը: Բն.՝ 1,583 մլն (2010): Սասանյանների օրոք եղել է նրանց վարչ. և տնտ. կենտրոնը, VII դ–ում Ս. գրավել են արաբները, ավերել՝ 1237–ին, 1387–ին գրավել է Լանկ Թամուրը: 1597–98–ին՝ Սեֆյանների պետության մայրաքաղաքը: 1722–ին Ս. գրավել և թալանել են աֆղանները: Պատմաճարտ. հուշարձաններից են գլխ. մզկիթը (IX–X դդ.), Չեհել-Դոխտարան (1107), Սարեբան (XII դ–ի վերջ) մինարեները, Շահի (1612–30), Լոթֆոլլա շեյխի (1603–18) մզկիթները ևն: Ս-ի հայերի մասին տես ***Նոր Ջուղա*** հոդվածում:

ՍՊԱՀԱՆԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ, ձևավորվել է XVI–XVII դդ–ի սահմանագծին Սպահանում (Իրան): Ս. մ. դ–ին բնորոշ են (առանձին թերթի վրա) հաստոց. մանրանկարները՝ վրձնով արված մեղմ գունավորմամբ բարձրարվ. գծանկարները (Ռզա Աբասի): 1670–ական թթ–ից Ս. մ. դ–ի ստեղծագործություններում նկատելի է եվրոպ. գեղանկարչության ազդեցությունը:

ՍՊԱՂԱՆԱՅ ՄԱԿԱՐ (Տոնոյան Մակար, մոտ 1850–ական թթ–1907), ազգ–ազատագր. շարժման գործիչ, ֆիդայի: 1895–ին Սասունում կազմել է ֆիդայական խումբ, 1899–ի նոյեմբ–ին կազմակերպել է Սպաղանքի ինքնապաշտպ–յունը: 1904–ի Սասունի ապստամբության ղեկ–ներից: 1905–07–ին գործակցել է ***Հունգ Չավուշի*** հետ:

ՍՊԱՆԱԽ (Spinacia), **ծնել,** թելուկազգինների ընտանիքի երկտուն, միամյա կամ երկամյա բույսերի ցեղ: Հայտնի է 3 տեսակ, ՀՀ–ում՝ 2 [քառառէջ և սովոր. (տարածված է մշակության մեջ)]: Ս. օգտագործում են տարբեր ճաշատեսակներ, հյութեր պատրաստելու, նաև պահածոյացման համար: Քառառէջ Ս. հանդիպում է Արագածոտնի և Կոտայքի մարզերում: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՍՊԱՆԴԱՐԱՄԵՏ, Սան դարամետ, երկիրն ու ստորերկրյա աշխարհն անձնավորող ոգի կամ հենց ինքը՝ ստորերկրյա աշխարհը հինհայկ. դից-յան մեջ: Ենթադրվում է, որ Ս. սկզբնապես եղել է բուսականության և պտղաբերության աստվածություն, հետագայում վերածվել դժոխքի, մեռյալների ու ստորերկրյա ոգիների տիրակալի: Ըստ Թովմա Արծրունու՝ երկիրը երբեմն համարվել է Ս-ի իջևանը:

ՍՊԱՆԴԱՐԱՆ ՊԵՐՈԶ, Սպատար Փերոզ, Սպանդարան Փերոզ, գվո ***Փայտակարան*** նհնգ–ում՝ մոտավորապես ներկայի Ադրբեջանի Հանրապետության հվ–ում, Թալիշի լ–ներից հս՝ Լերիքի շրջանում՝ Աթշի Բագավան և Որմիզդ Պերոժ գվո–ների հարևանությամբ:

ՍՊԱՆԴԱՐՅԱՆ Սպանդար Ամիրջանի (1849–1922), հաս. գործիչ, հրապարակախոս, խմբ–հրտ.: Իրավագիտ-յան դ–ր (1872): Սուրեն ***Սպանդարյանի*** հայրը: 1883–ից՝ «***Նոր–Դար***» (Թիֆլիս) պարբ–ի հիմնադիր և խմբ–հրտ.: 1903–ին հանդես է եկել ցար. կառ-յան դեմ, ձերբակալվել է և վտարվել Կովկասից: 1910–ից՝ Փարիզում: Նպաստել է հայ նոր և թարգմ. գրկ-յան, հրտչ. գործի զարգացմանը:

ՍՊԱՆԴԱՐՅԱՆ Ստեփան Սուրենի (1906–1984), բասկետբոլիստ, մարզիչ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1943), վ. մ. (1957): Սուրեն ***Սպանդարյանի*** որդին: 1947–ից մարզել է ԽՍՀՄ բասկետբոլի տղամարդկանց հավաքականը: 1951–52 և 1956–61–ին ղեկավարել է ԽՍՀՄ տղամարդկանց թիմի մարզչ. կազմը: Ս-ի գլխավորությամբ ԽՍՀՄ հավաքականը 4 անգամ դարձել է Եվրոպայի չեմպիոն (1951, 1957, 1959, 1961) և 3 անգամ՝ օլիմպ. խաղերի արծաթե մեդալակիր (1952, 1956, 1960): Կինը՝ **Էլլա Միսիս** (1912–2008), բասկետբոլի ԽՍՀՄ չեմպիոն, ռեկորդսմեն:

ՍՊԱՆԴԱՐՅԱՆ Սուրեն Սպանդարի, **Տիմոֆեյ** (1882–1916), հաս–քաղ. գործիչ, լրագրող, գրաքննադատ: Սպանդար ***Սպանդարյանի*** որդին, Ստեփան ***Սպանդարյանի*** հայրը: ՌՍԴԲԿ անդամ՝ 1901–ից: Ստեփան ***Շահումյանի*** և Սարգիս ***Կասյանի*** հետ խմբագրել է «Կայծ», «Նոր խոսք», «Օրեր» հայ. բոլշևիկ. թերթերը, մասնակցել է «Բակինսկի ռաբոչի», «Գուդոկ» և այլ թերթերի հրտ-յանը: 1912–ին Թիֆլիսում կազմակերպել է ընդհատակյա տպարան: Նույն թվականի մայիսին ձերբակալվել և բանտարկվել է Թիֆլիսի Մետեխի բանտում: 1913–ի մայիսին դատապարտվել է ցմահ աքսորի՝ Սիբիր: Ս. թողել է գր. և հրապարակախոս. հարուստ ժառանգություն:

ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ՋՐԱՄԲԱՐ, ՀՀ Սյունիքի մարզում՝ Որոտանի վերին հոսանքի

ավազանում՝ Սիսիան ք–ից 35 *կմ* հս–արմ.: Սպանդարյանի ջրէկի գլխամաս. ջրամբարն է, Որոտանի կասկադի կարգավորիչը: Շահագործվել է 1976–ին: Երկ.՝ 79 *մ*, լայն.՝ 2,5–3 *կմ*, մակերեսը՝ 10,8 *կմ*^{2}, խոր.՝ 73 *մ*, ջրատարողությունը՝ 276 մլն *մ*^{3}, օգտ.՝ 237 մլն *մ*^{3}: Պատվարը հողալիցք է, բարձր.՝ 89 *մ*: Ջրից 165 մլն *մ*^{3} տեղափոխվում է Կեչուտի ջրամբար, ապա՝ Սևանա լիճ:

ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ՋՐԷԿ, Հայաստանի ամենախոշոր ջրէկներից, Որոտանի ջրէկի համալիրի բաղկացուցիչ է: Հզորությունը՝ 71 *ՄՎտ*, էներգիայի տարեկան արտադր–յունը՝ 210 *ԳՎտ · ժ*: Կառուցվել է 1989–ին, ամբարտակը Սպանդարյանի ջրամբարն է:

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ, դիտավորությամբ կամ անզգուշությամբ մարդուն կյանքից զրկելը: Տարբերում են դիտավորյալ Ս. ծանրացնող հանգամանքներում, դիտավորյալ Ս. առանց ծանրացնող հանգամանքների, դիտավորյալ Ս. հոգեկան հանկարծ. խիստ հուզված վիճակում, Ս. անհրաժեշտ ինքնապաշտպ–յան սահմանների անցումով, անզգույշ Ս.: Քր. օրենսդրությամբ դիտավորյալ Ս. անձի դեմ ուղղված առավել ծանր հանցագործություն է:

ՍՊԱՌՄԱՆ ՖՈՆԴ, ազգ. եկամտի մաս մակրոտնտ. մակարդակում, որն օգտագործվում է սպառման առարկաների ու ծառայությունների նկատմամբ անհատ. և հաս. պահանջմունքների բավարարման համար:

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՐԺԵՔ, իրի օգտակարությունը, մարդկային որևէ պահանջմունք բավարարելու նրա ունակությունը:

ՍՊԱՌՈՒՄ, հաս. արդյունքի օգտագործումը պահանջմունքների բավարարման ընթացքում, վերարտադր–յան եզրափակիչ փուլը: Ստորաբաժանվում է արտադրող. և անձն. Ս–ման: Կախված սպառվող բարիքների տեսակից՝ տարբերում են նյութ. բարիքների Ս., որն ունի իրային ձև, և ծառայությունների Ս.: Պահանջմունքների բավարարման եղանակից կախված՝ Ս. լինում է անհատ. կամ կոլեկտիվ:

ՍՊԱՍ, **թանապուր**, կերակրատեսակ: Թանը (թարմ մածունի կամ չորթանի) խառնում են ձվի ու ալյուրի խյուսի, թթվասերի հետ, ավելացնում նախապես խաշած ցորենի ձավարին և եփում մարմանդ կրակի վրա անընդհատ խառնելով: Սաստուցում են սոխառածով և տարբեր համեմունքներով:

ՍՊԱՍԱԼԱՐ, ՋՈՒ գլխ. հրամ. միջնադար. Հայաստանում, վրաց. պատմագրության մեջ՝ *Ամիրասպասալար* (սպարապետ, գլխ. հրամ.):

ՍՊԱՍԿԻ Բորիս Վասիլևիչ (1937–2016), ռուս. շախմատիստ, աշխարհի 10–րդ չեմպիոնը (1969–72), միջազգ. գրոսմայստեր (1955), ԽՍՀՄ ս. վ. վ. (1965): Լրագրող: ԽՍՀՄ չեմպիոն (1961, 1973): 1976–ից՝ Ֆրանսիայում:

ՍՊԱՍԿԻ Իգոր Դմիտրևիչ (ծ. 1926), նավաշինության բնագավառի ռուս. գիտնական: ՌԳԱ ակադ. (1987): Սոց. աշխ. հերոս (1978): Աշխ–ները վերաբերում են սուզանավերի նախագծմանն ու շին. մեխանիկային: Լենինյան (1965), ԽՍՀՄ (1983), ՌԴ (2006) Պետ. մրց–ներ:

ՍՊԱՍԿԻ Միխայիլ Ֆեոդորովիչ (1809–1859), ռուս. օդերևութաբան: Հեղինակ է Սոսկվայի կլիմայի մասին 1–ին մենագրության (1847): Առաջ է քաշել կլիմայի ձևավորման վրա մթն. շրջանառության որոշիչ ազդեցության գաղափարը:

ՍՊԱՍՈԿՈՒԿՈՑԿԻ Սերգեյ Իվանովիչ (1870–1943), ռուս. վիրաբույժ, գիտ. դպրոցի հիմնադիր: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1942): Աշխ–ները վերաբերում են ստամոքսաղիք. համակարգի, թոքերի վիրաբուժության, արյան փոխներարկման հարցերին: Առաջարկել է վիրաբույժի ձեռքերի նախավիրահատ. մշակումը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942):

ՍՊԱՐԱՊԵՏ, **սպահապետ, ասպահապետ** (< պհլ. spah – զորք, հեծելազոր և pat – պետ, գլխավոր), ***սպարապետության*** ՋՈՒ գլխ. հրամ. Հին և միջնադար. Հայաստանում: Անմիջաբար ենթարկվել է թագավորին և գործել նրա հրամանով: Կիլիկյան Հայաստանում կոչվել է նաև գունդստաբլ: ՂԱՊ–ի տարիներին «սպարապետ» պատվանունը տրվել է Վազգեն *Սարգսյանին*:

ՍՊԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՋՈՒ կառավարող արքունի գործակալություն Հին և միջնադար. Հայաստանում: Գործակալն ***սպարապետն*** էր: Արշակունյաց թագավորության անկումից (428) հետո Ս. պահպանել է իր իրավունքները մարզպան. Հայաստանում: Գլխավորել է հայ ազատագր. շարժումները (450–451, 481–484 ևն) Սասանյանների դեմ: Ս. վարել են Մամիկոնյանները, Բագրատունիները, Պահլավունիները. Կիլիկյան Հայաստանում հիմնականում՝ Ռուբինյաններն ու Հեթումյանները:

ՍՊԱՐԿԵՐ, **Սպատկերտ,** գվո *Բիթլիսի* նհնգ–ում՝ Վանա լճից հվ: Բաժանվել է Վերին, Ստորին և Նզար գվոկ–ների: 1555–ի Ամասիայի պայմանագրով անցել է Օսմ. կայսրությանը: 1880–ական թթ–ին միացվել է Բիթլիսի նհնգ–ի Խիզանի գվո–կին: ***Աղթամարի կաթողիկոսության*** թեմերից էր: 1877–78–ին՝ շեյխ Ջալալեդդինը, 1895–ին համիդ. հրոսակները Ս–ում կազմակերպել են հայերի ջարդեր: XX դ–ի սկզբին Ս–ում բնակվել է 4–4,5 հզ. հայ: Զբաղվել են անասնապահությամբ, շալագործությամբ, մասամբ՝ այգեգործությամբ: Ս–ի հայերի մեծ մասը Մեծ եղեռնից փրկվել է և ապաստանել Արլ. Հայաստանում:

ՍՊԱՐՏԱ, **Սպարտե**, **Լակեդեմոն**, հին–հուն. ք–պետություն (պոլիս) Լակոնիկայում (Պելոպոնես), վերածվել է (մ. թ. ա. VIII–VI դդ.՝ Պելոպոնեսի հվ. մասի նվաճումից հետո) խոշոր պետության: Ըստ ավանդության՝ Ս–ի պետ. կառույցը հաստատել է Լիկուրգոսը (IX–VIII դդ.): Ս. պոլիսի դաս. օրինակ է՝ օլիգարխ. պետ. կառույցով. պետ. գործերը վճռել է գերուսիան, այնուհետև՝ էֆորների կոլեգիան: Ս–ի և Աթենքի միջև պայքարը հանգեցրել է ***Պելոպոնեսյան պատերազմին*** (մ. թ. ա. 431–404). հաղթելով՝ Ս. դարձել է Հունաստանի առաջնորդը: ***Թեբեի*** և նրա դաշնակիցների դեմ պատերազմում պարտվելուց (371 և 362) հետո Ս. դարձել է երկրորդ. պետություն: 146–ին ենթարկվել է Հռոմին, մ. թ. ա. 27–ին մտել հռոմ. Աքայա պրովինցիայի կազմի մեջ:

ՍՊԱՐՏԱԿ (Spartacus, ծ. թ. անհտ–մ. թ. ա. 71), Հին Հռոմում ստրուկների խոշոր ապստամբության (մ. թ. ա. 74/73–71) առաջնորդ: Եղել է Կապուայի գլադիատոր. դպրոցում: Ապստամբությունն ընդգրկել է Հվ. Իտալիան, այնուհետև՝ փաստորեն ողջ Իտալիան: Ապստամբների բանակը հասել է մոտ 70 հզ–ի: 71–ին Ս. ջախջախվել է ***Պրաստի*** հռոմ. բանակից և սպանվել մարտում: Ս–ին են նվիրված Արամ ***Խաչատրյանի*** «Սպարտակ» բալետը, Ռ. Զովանյոլիի համանուն պատմավեպը:

«ՍՊԱՐՏԱԿ», կոմ. երիտասարդ. կազմ–յուններ Անդրկովկասում: Հիմնադրվել և գործել են 1917–19–ին: Կոչվել են ***Սպարտակի*** անունով: Հայաստանում «Ս.» 1–ին կազմ–յունն ստեղծվել է 1919–ին Երևանում: Հիմնադիր անդամներն էին Ղուկաս *Ղուկասյանը*, Արմենակ *Բուդաղյանը*, Աղասի *Խանջյանը* և ուր.:

«ՍՊԱՐՏԱԿ», կամավոր մարզ. ընկ. ՀԽՍՀ–ում, ստեղծվել է 1935–ին՝ միութ. համանման կազմ–յան օրինակով: 1982–ին ընկ–յան անդամ էր 113 հզ. մարդ, որոնցից 8–ն արժանացել են ԽՍՀՄ ս. վ. վ–ի, 6–ը՝ վ. մ–ի, 64–ը՝ ՀՀ վ. մ–ի կոչման: Գործել է «Ս.»–ի 463 ֆիզկուլտուրայի կոլեկտիվ, 6 մարզադպրոց:

«ՍՊԱՐՏԱԿ», բալետ, երաժշտությունը՝ Արամ ***Խաչատրյանի*** (1954, լիբրետոն՝ Ն. Վոլկովի), 4 գործողությամբ մոնումենտալ երկ. պատկերված են մ. թ. ա. 73–71–ին Հին Հռոմում Սպարտակի առաջնորդությամբ ստրուկների ապստամբության դեպքերը: Առաջին ներկայացումը 1956–ին՝ Լենինգրադի ՕԲԹ–ում, ԵՕԲԹ–ում՝ 1961–ին (բալետմայստեր՝ Ե. Չանգա), ապա՝ 1977, 1978, 1982, 1987, 2009–ին: Սպարտակի դերապարով հանդես են եկել Վ. Խանամիրյանը (առաջին դերակատարը), Վ. Գալստյանը, Հ. Դիվանյանը, Ս. Բարանովը, Ռ. Մուրադյանը, Ս. Ավետիսյանը և ուր.:

«ՍՊԱՐՏԱԿ ՄԻՈՒԹՅՈՒՆ» («Spartakusbund»), Գերմանիայի ձախ սոցիալ–դեմոկրատների կազմ–յուն: Կազմավորվել է (1918) «Սպարտակ խմբի» (ստեղծվել է 1916) վերափոխման ճանապարհով: «Ս. մ.» ԿԿ–ում եղել են Կ. Լիբկնեխտը, Ռ. Լյուքսեմբուրգը, Ֆ. Մերինգը, Ի. Յոգիխեսը, Վ. Պիկը և ուր.: Մինչև 1918–ի վերջ՝ Գերմանիայի անկախ ս–դ. կուս–յան կազմում էր: Բեռլինում սպարտակցիների և ձախ ռադիկալների խորհրդաժողովով (1918) կազմավորվել է Գերմանիայի ԿԿ:

ՍՊԱՐՏԱԿԻԱԴԱ, ավանդ. զանգված. համալիր մարզ. մրցումներ, կոչվել են ***Սպարտակի*** անունով: 1–ին Ս–ները կազմակերպել են 1920–ական թթ–ին ԽՍՀՄ–ի, Գերմանիայի, Չեխոսլովակիայի բանվ. կազմ–յունները: 1928–ին Մոսկվայում կայացել է 1–ին համամիութ., 1956–91–ին՝ ԽՍՀՄ ժողդ–ների 10 ամառ. և 7 ձմեռ. Ս–ներ:

ՍՊԱՐՏՈԿՅԱՆՆԵՐ, տիրակալների հարստություն (մ. թ. ա. 438–II դ–ի վերջ) *Բոսպորի թագավորությունում*:

ՍՊԵԼԵԼՈԳԻԱ (< լատ. spelaiou – անձավ և ...*լոգիա*), **անձավագիտություն**, գիտ–յուն, զբաղվում է քարայրերի ուսումնասիրմամբ, դրանց ծագման, ձևաբա–նության, միկրոկլիմայի, ջրերի, օրգ. աշխարհի, նյութ. մշակույթի մնացորդների և ժամանակակից օգտագործման խնդիրներով:

ՍՊԵԿՏՐ (լատ.՝ spectrum – տեսք, պատկերացում), համակարգը կամ շարժընթացը ընորոշող որևէ ֆիզ. մեծության բոլոր արժեքների համախումբը ֆիզիկայում: Ավելի հաճախ օգտագործվում են հաճախականության, տատանման (էլեկտրամագնիս. և ձայն.), էներգիայի, իմպուլսների և մասնիկների զանգվածի Ս. հասկացություննե–

րը (տես *Սպեկտրադիտում*)։ Ս. կարող է լինել անընդհատ և ընդհատուն։

ՍՊԵԿՏՐԱԳՐԻԶ, սարք, որի ընդունիչը միաժամանակ գրանցում է Ս–ի կիզակետ. հարթության վրա փոված ամբողջ օպտիկ. սպեկտրը։ Կիրառվում է օպտիկ. սպեկտրադիտման, *սպեկտրային վերլուծության* մեջ։

ՍՊԵԿՏՐԱՅԻՆ ԳԾԵՐ, գծեր՝ ատոմների, մոլ–ների և այլ քվանտ. համակարգերի էլեկտրամագնիս. ճառագայթման սպեկտրներում։ Տվյալ Ս. գ–ին համապատասխանող ճառագայթումը բնութագրվում է ալիքի որոշակի երկ–յամբ (հաճախականությամբ)։ Յուրաքանչյուր Ս. գ. համապատասխանում է որոշակի քվանտ. անցման, որի բնույթից կախված՝ տարբերում են կլանման և արձակման Ս. գ.։

ՍՊԵԿՏՐԱՅԻՆ ԴԱՍԵՐ, աստղերի դասակարգումը՝ ըստ նրանց սպեկտրների գծերի ինտենսիվության՝ կախված աստղի մթն–ի ֆիզ. պայմաններից (ջերմաստիճան, ճնշում ևն)։ Հիմն. Ս. դ. նշանակվում են O–B–A–F–G–K–M–ով, ըստ ջերմաստիճանի նվազման (30 հզ–ից մինչև 3 հզ. K)։ O և B Ս. դ–ի աստղերը երկնագույն են, A և F–ը՝ սպիտակ, G–ն՝ դեղին (դրանց թվին է պատկանում նաև Արեգակը), K–ն՝ նարնջագույն, M–ը՝ կարմիր։

ՍՊԵԿՏՐԱՅԻՆ ԼԱՄՊ, որևէ քիմ. տարրի ատոմ. սպեկտրի ստացման գազապարպում. սարք։ Ս. լ–ում օգտագործվում են աղեղ. և մարմրող էլ. պարպումներ, որոնք իրականացվում են հետազոտվող տարրի գոլորշիների 1,3–130 *Պա* և բուֆեր. (իներտ) գազի 130–670 *Պա* ճնշման պայմաններում։ Ս. լ. ծառայում է հիմնականում որպես գծային սպեկտրի աղբյուր։ Բացառություն են դեյտերիումային և ջրածնային լամպերը, որոնք նաև ճառագայթում են հոծ սպեկտր ԱՄ տիրույթում։ Ս. լ. կիրառում են ինտերֆերոմետրերում, հաճախականության չափորոշիչներում, լուսաէլ. սպեկտր. սարքերում (քվանտաչափ), մագնիսաչափներում ևն։

ՍՊԵԿՏՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, նյութի բաղադրության որակ. և քանակ. որոշման ֆիզ. եղանակ՝ ըստ նյութի օպտիկ. սպեկտրների։ Տարբերում են ատոմ. և մոլ. առաքման (արձակման) և աբսորբցիոն (կլանման սպեկտրներով) Ս. վ.։ Որակ. Ս. վ–յան դեպքում ստացված սպեկտրը բացատրվում է քիմ. տարրերի և առանձին միացությունների սպեկտրների աղյուսակների ու ատլասների միջոցով։ Քանակ. Ս. վ–յան ժամանակ հետազոտվող նյութի բաղադրությունը որոշում են սպեկտրում գծերի կամ շերտերի բացարձակ կամ հարաբեր. ինտենսիվությամբ։

ՍՊԵԿՏՐԱՅԻՆ ՑՈՒՑԻՉ ճառագայթման, α ցուցիչի արժեքը հաճախականությունից (ν) էլեկտրամագնիս. ճառագայթման ինտենսիվության (I_ν)՝ աստիճան. կախվածության մեջ ($I_\nu \sim \nu^{-\alpha}$)։ Արժեքը որոշվում է ճառագայթման բնույթով, որը հնարավորություն է տալիս, օր., դասակարգելու տիեզ. օբյեկտների (բարախիչներ, քվազարներ) ճառագայթումը՝ որպես ջերմ. կամ սինքրոտրոն.։

ՍՊԵԿՏՐԱԶԱՓ օպտիկական, ճառագայթման լուսաէլ. ընդունիչի միջոցով օպտիկ. սպեկտրների չափման սարք։

ՍՊԵԿՏՐԱԶԱՓՆԵՐ միջուկային ֆիզիկայում, չեզոք կամ լիցքավորված մասնիկների էներգիայի (էներգետիկ. սպեկտրների) գրանցման և չափման սարքեր։ Դասակարգում են՝ ըստ ճառագայթման տեսակի (α–, β–, γ–, նեյտրոն. և այլ Ս.), ըստ աշխ–ի սկզբունքի (մագնիս., առկայծում., կիսահաղորդչ., բյուրեղդիֆրակցիոն ևն) և կառուցվածք. առանձնահատկություններով։

ՍՊԵԿՏՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ, ֆիզիկայի բաժին. ուսումնասիրում է էլեկտրամագնիս. ճառագայթման սպեկտրները։ Ըստ ճառագայթման ալիքների ընդգրկույթի՝ տարբերում են ճառագայթառադիո–, ԵԿ, տեսանելի լույսի, ԱՄ, ռենտգեն., գամմա–Ս–ներ, ըստ հետազոտվող ատոմ. համակարգերի՝ ատոմ. մոլ. բյուրեղների Ս., իսկ ճառագայթման աղբյուրից, օգտագործվող սարքերից և այլ փորձառ. հարմարանքներից կախված՝ լազեր., ֆուրյե, վակուում. ևն։ Ս. *սպեկտրային վերլուծության* հիմքն է։

ՍՊԵԿՏՐՆԵՐ ՕՊՏԻԿԱԿԱՆ, էլեկտրամագնիս. ճառագայթման սպեկտրներ՝ ալիքի ԵԿ, տեսանելի և ԱՄ տիրույթներում։ Տարբերում են արձակման (առաքում). կլանման, ցրման և անդրադարձման Ս. օ–ներ։ Ըստ տեսքի՝ կարող են լինել գծային (առանձին սպեկտրալ գծերից), շերտավոր (սպեկտր. շերտերից. բնութագրվում են ալիքների երկ–յան միջակայքերով) և հոծ։ Ատոմների համար Ս. օ–ները տիպիկ գծային են, էլեկտրոնների համար՝ շերտավոր։

ՍՊԵԿՈՒԼՅԱՑԻԱ (լատ.՝ speculatio – հետամուտ լինել, զննել), արժեքների (բաժնետոմսեր, ապրանքներ, արժույթ ևն) առուվաճառք՝ գնման ու վաճառքի գների (փոխարժեքի) տարբերությունից շահույթ ստանալու նպատակով։

ՍՊԵՂԱՆԻ, պլաստիր (լատ.՝ emplastron – քսուք), դեղաձև՝ արտաքին օգտագործման համար, պլաստիկ զանգված, որը մարմնի ջերմությունից փափկում է և կպչում մաշկին։ Տոգորված է ճարպաթթուների կապարային աղերով՝ մոմի, բևեկնախեժի դեղանյութերի և այլ նյութերի հետ խառնած։ Կպչուն Ս. օգտագործվում է վիրակապերի ամրացման համար։

ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆ (Սպենդիարով) Ալեքսանդր Աֆանասիի (Ստեփանոսի, 1871–1928), կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ, հաս. գործիչ։ Տատյանա *Սպենդիարովայի* հայրը, Լեոնիդ *Սպենդիարովի* եղբայրը։ ՀԽՍՀ ժող. արտիստ (1926)։ Հայկ. սիմֆոնիզմի հիմնադիրը։ Նպաստել է հայկ. ազգ. կոմպոզիտոր. դպրոցի գեղագիտ. սկզբունքների, ոճ. առանձնահատկությունների ձևավորմանը։ Ստեղծել է ծրագր., վառ, պատկերավոր, ժող. հիմքերով գործեր։ Հեղինակ է «Ալմաստ» օպերայի (ըստ Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի, 1923, որով բացվել է ԵՕԹԹ), «Դրիմի էսքիզներ»–ի (2 սյուիտ, 1903, 1912), «Երևանյան էտյուդներ»–ի (1925), «Երեք արմավենի» սիմֆ. պատկերի (1905, ըստ Մ. Յ. Լերմոնտովի), «Զնոորան ու փերին» բալլադի (1902)՝ բասի և նվագախմբի համար, ռոմանսների, երգերի և այլ գործերի։ Աշակել է ժող., հեղ. երգեր («Վարշավյանկա», «Անվախ ընկեր» ևն)։

Մ. Գլինկայի անվ. մրց. (1908, 1910, 1912)։

ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՔԱՌՅԱԿ, հիմնադրվել է 1932–ին Սոսկվայում։ Հիմնադիրներ՝ Հ. Բոգդանյան՝ 1–ին ջութակ, Ա. Գրիգորյան՝ 2–րդ ջութակ, Ա. Ազատյան՝ ալտ, Գ. Ադամյան՝ թավջութակ։ 1934–ից՝ Ալեքսանդր *Սպենդիարյանի* անվ.։ 1935–ից՝ ՀԽՍՀ պետ. քառյակ։ Գործել է մինչև 1956–ը։

ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ՏՈՒՆ–ԹԱՆԳԱՐԱՆ, հիմնադրվել է 1963–ին Երևանում, գործում է 1967–ից։ Բաժիններից մեկը նվիրված է նրա ստեղծագործության երևանյան շրջանին (1924–28)։ Թանգարանում պարբերաբար կազմակերպվում են համերգներ, դասախոսություններ, ամեն տարի սեպտ. 25–ին տեղի են ունենում սպենդիարյանական օրեր։ Տնօրեններ՝ Ծ. Համբարձումյան, Հ. Գևորգյան, Մ. Օթարյան (1996–ից)։

ՍՊԵՆԴԻԱՐՈՎ (Սպենդիարյանց) Լեոնիդ Աֆանասիի (Ստեփանոսի, 1869–1897), երկրաբան։ Ալեքսանդր *Սպենդիարյանի* եղբայրը։ Ուսումնասիրել է Արագածի և Կոտայքի շրջանների նորագույն հրաբխ. ապարները, Ավստրիայի երկրբ. կառուցվածքը։ Ղրիմում և Կովկասում հավաքել ու մշակել է ինէաբան. հետաքրքիր նյութեր։ Ս–ի զոհվելուց հետո (1897) սահմանվել է **Սպենդիարովի անվան մրցանակ**։

ՍՊԵՆԴԻԱՐՈՎԱ (Սպենդիարյան) Տատյանա Ալեքսանդրի (1901–1990), թարգմանչուհի, բանաստեղծուհի։ Ալեքսանդր *Սպենդիարյանի* դուստրը։ Գրել է ռուս.։ Թարգմանել է Սայաթ–Նովայի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Վ. Տերյանի, Դ. Վարուժանի, Ե. Չարենցի, Հ. Շիրազի և ուր., ինչպես նաև Արևելքի և այլ ժողդ–ների պոեզիայից։ Հեղինակ է բանաստեղծությունների («Նվեր», 1922) և պատմվածքների։

ՍՊԵՆԴԻԱՐՈՎԻ ԱՆՎԱՆ ՄՐՑԱՆԱԿ (Spendiarov prize), միջազգ. մրց. երկրբ–յան ընագավառում։ Սահմանել է Ռուսաստանի երկրբ. կոմիտեն (1897, Ս. Պետերբուրգ՝ 28 տարեկանում զոհված Լեոնիդ *Սպենդիարովի* հիշատակը հավերժացնելու համար։ Շնորհում է Միջազգ. երկրբ. վեհաժողովն այն երկրի աչքի ընկնող գիտնականներին, որտեղ անցկացվում է վեհաժողովի նստաշրջանը։

ՍՊԵՆՅԱՆ Քերովբե (1817–1886), բանաստեղ, լեզվաբան, ՎննՄՄ անդամ, քհն. (1838)։ Հեղինակ է «Ուսումն դասական հայերէն լեզուի» աշխ–յան, որը վերամշակել, լրացրել և լույս է ընծայել Հակոբոս *Տաշյանը*՝ որպես համանուն մեկ այլ աշխ–յան մաս՝ «Առաջին դպրութիւն անգիր ժամանակք» (1920) վերնագրով։ Հեղինակ է նաև աստվածաբան. աշխ–յան (աշխարհաբար) և «Քերականութիւն գերմաներէն լեզուի» (1844) դասագրքի։

ՍՊԵՐ, Իսպեր, Ըսպեր, գվո *Բարձր Հայք* նահանգ–ում՝ Ճորոխ գետի վերին հոսանքի շրջանում։ Եղել է *Բագրատունիների* ժառանգ. տիրույթ։ Իշխանանիստ կենտրոնն էր Սպեր բք–ն։ Հռչակված էր իր ոսկու և արծաթի հանքերով։ 885–ից՝ Բագրատունիների թագավորության, 1555–ից՝ Օսմ. կայսրության կազմում։ XVII դ–ում Ս. հիմնականում հայաբնակ էր։ Սակայն թուրք–պարսկ. ավերիչ պատերազմները և օսմ. բռնապետությունը հարկադրել են հազարավոր հայերի կրոնափոխվել (հատկապես՝ XVIII դ–ում) կամ տարագրվել (մասնավորապես՝ 1829–30–ին Ռուսաստանին անցած Ախալցխա և Ախալքալաք)։ Մեծ եղեռնի օրերին Ս–ի շուրջ 4 հզ. քրիստոնյա հայերը կոտորվել են, իսկ սակավաթիվ փրկվածներն ապաստանել են տարբեր երկրներում։

ՍՊԵՐԱՆՍԿԻ Գեորգի Նեստորովիչ (1873–1969), ռուս. մանկաբույժ։ ԽՍՀՄ

ԳԱ թղթ. անդամ (1943), ԲԳԱ ակադ. (1944): Սոց. աշխ. հերոս (1957): Աշխ-ները վերաբերում են մանկ. հիվանդությունների կանխարգելմանը, վաղմանկ. տարիքի ֆիզիոլոգիային և ախտաբանությանը:

Լենինյան մրց. (1970, հետմահու):

ՍՊԵՐԱՆՍԿԻ Միխայիլ Միխայլովիչ (1772–1839), ռուս պետ. գործիչ, կոմս (1839): Իսկ. գաղտնի խորհրդական (1827), Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. անդամ (1819): 1808-ից՝ Ալեքսանդր I կայսեր մերձավորագույն խորհրդականը, հեղինակ է լիբերալ վերափոխումների պլանի, նախաձեռնել է ***Պետական խորհրդի*** ստեղծումը (1810): Պետ. քարտուղար (1810–12): Հակառակորդների խարդավանքների հետևանքով աքսորվել է (1812–16): Սիբիրի գլխ-նահանգապետ (1819–21): Կազմել է Սիբիրի վարչ. բարեփոխումների պլան (իրագործվել է մասնակիորեն): Նորին կայսեր. մեծության անձն. գրասենյակի 2-րդ առանձին բաժանմունքի փաստացի ղեկ. (1826–32): Կազմել է Ռուս. կայսրության հիմն. պետ. օրենքները (1832), պատրաստել է Ռուս. կայսրության 1-ին «Օրենքների լրիվ ժողովածուն» և «Հավաք օրինացը»:

ՍՊԵՐԱՆՍԿԻ Սերգեյ Բորիսովիչ (1914–1983), ռուս. ճարտ.: ԽՍՀՄ ժող. ճարտ. (1971): ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1979): Ս. Պետերբուրգում նախագծել է Հեռուստակենտրոնը (1962), «Լենինգրադ» հյուրանոցը (1970) ևն: ԽՍՀՄ Պետ. (1973), Լենինյան (1978) մրց-ներ:

ՍՊԵՐՄԱՏՈԳԵՆԵԶ (< հուն. sperma, սեռ. հոլ.՝ spermatos – սերմ և ...***գենեզ***), տարբերակված արական սեռ. բջիջների (սպերմատոզոիդներ) առաջացումը մարդու և կենդանիների սերմնագեղձերում, ստորակարգ բույսերի՝ անթերիդիումներում: Բարձրակարգ բույսերում նաև ծաղկափոշու խողովակում առաջանում են սեռ. բջիջներ, որոնք հաճախ կոչվում են սպերմիաներ:

ՍՊԵՐՄԱՑԵՏ, **կետաճարպ**, մոմանման նյութ. հանվում է կաշալոտի գլխի հատուկ պարկից: Օգտագործում են որպես քսանյութ և քսուքների ու կրեմների հիմք:

ՍՊԻ, 1. պինդ շարակց. հյուսվածք, որը զարգանում է նախկին վերքի, խոցի, թարախակույտի և այլ տեղերում: Ս-ի առաջացումը հյուսվածքների ամբողջականության խախտման դեպքում վերականգնող. կենսընթացի վերջն. փուլն է: 2. (Բուսաբ.) ծաղկի վարսանդի վերին մասը, որը փոշոտման ժամանակ ընդունում է ծաղկափոշին:

ՍՊԻԿԱ, (α Կույսի), 1-ին տեսանելի *ա. մ.* կապույտ հսկա աստղ, լուսատվությունը արեգակնայինից մեծ է 740 անգամ:

ՍՊԻՆ (անգլ.՝ spin – պտույտ), միկրոմասնիկի շարժման քանակի սեփ. մոմենտը, ունի քվանտ. բնույթ և կապված չէ մասնիկի շարժման հետ՝ որպես ամբողջություն. չափվում է Պլանկի հաստատունի ի միավորներով և կարող է լինել ամբողջ. (0, 1, 2.....), կամ կիսաամբողջ. (1/2, 3/2, ...):

ՍՊԻՆԱԼ (լատ.՝ spina – թիկունք, ողնաշար) (անատոմ.), բարդ բառերի մաս. նշանակում է ողնաշար., ողնուղեղ., ողնաշարին կամ ողնուղեղին վերաբերող (օր.՝ սպինալ՝ ողնուղեղ. նյարդեր):

ՍՊԻՆՈԶԱ (Spinoza, d'Espinosa) Բենեդիկտ (Բարուխ, 1632–1677), հոլանդացի պանթեիստ, փիլ.: Ըստ Ս-ի՝ աշխարհին օրինաչափ համակարգ է, որը հնարավոր է ամբողջովին ճանաչել երկրչփ. մեթոդով: Բնությունը, որը պանթեիստորեն նույնացվում է Աստծու հետ, միասնական, հավերժ և անվերջ ***սուբստանց*** է, ինքն իր պատճառն է: Մտածողությունը և ձգողությունը սուբստանցի ատրիբուտներն են (անբաժանելի հատկություններ), առանձին իրերն ու գաղափարները՝ նրա ***մոդուսները*** (եզակի դրսևորումներ): Մարդը բնության մասնիկ է, նրա հոգին մտածողության մոդուսն է, մարմինը՝ ձգողության: Ըստ Ս-ի՝ կամքը համընկնում է բանականության հետ, մարդու բոլոր գործողությունները ներառված են համընդհ. համաշխ. պատճառահետևանքային շղթայի մեջ: Հեղինակ է «Աստվածաբանական-քաղաքական տրակտատ» (1670), «Բարոյագիտություն» (1677) և այլ աշխ-ների:

ՍՊԻՆ-ՈՒԼԵՑԵՐԱՅԻՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ, մասնիկների փոխազդեցություն, որը կախված է նրանց շարժման քանակի սպինային և ուղեծրային մոմենտների մեծություններից և փոխուղղվածությունից. բնութագրում է համակարգի էներգետիկ մակարդակների նուրբ կառուցվածքը:

ՍՊԻՎԱԿ Պյոտր Եֆիմովիչ (1911–1992), ռուս. ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1964): Աշխ-ները վերաբերում են միջուկ. և թույլ փոխազդեցությունների ֆիզիկային: ԽՍՀՄ Պետ. մրց. (1953), Ի. Վ. Կուրչատովի անվ. ոսկե մեդալ (1962):

ՍՊԻՎԱԿՈՎ Վլադիմիր Թեոդորովիչ (ծ. 1944), ռուս. ջութակահար, դիրիժոր (ծագումով՝ հրեա): ԽՍՀՄ (1990), ՀՀ (1989), Հս. Օսիայի (2005) ժող., ՅՈՒՆԵՍԿՕ-ի խաղաղության (2006) արտիստ: «Մոսկվայի վիրտուոզներ» կամեր. նվագախմբի հիմնադիր-գեղ. ղեկ. (1979–ից):

Մինչեալի ջութակահարների միջազգ. մրցույթի 1-ին (1969), Ն. Պագանինիի (Ջենովա, 1967) և Պ. Ի. Չայկովսկու (Մոսկվա, 1970) անվ. միջազգ. մրցույթների 2-րդ, Մ. Լոնգի և Ժ. Տիբոյի անվ. (Փարիզ, 1965) միջազգ. մրցույթի 3-րդ, ԽՍՀՄ Պետ. (1989) մրց-ներ, ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (1999), ՌԴ «Բարեկամության» (1994), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 3-րդ (1999) և 2-րդ (2009) աստիճանների, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Վ. Ա. Մոցարտի անվ. ոսկե (2009) մեդալներ:

ՍՊԻՏԱԿ (մինչև 1949-ը՝ Համամլու), ք. (1960-ից) ՀՀ Լոռու մարզում՝ Փամբակ գետի ափին: Բն.՝ 19,6 հզ. (2010): 1988-ի դեկտ-ի Սպիտակի երկրաշարժից գրեթե ամբողջովին ավերվել է: Վերակառուցվել է տարբեր երկրների օգնությամբ: Ս-ով են անցնում Երևան–Թբիլիսի երկթղ-ն, Վանաձոր–Երևան, Վանաձոր–Գյումրի ավտոմայրուղիները:

ՍՊԻՏԱԿ ԱՂՎԱՄԱՋԱՏՈՒԻ ՅԵՂ ճագարների, ստացել են ՌԴ Կուրսկի, Վորոնեժի, Կիրովի մարզերում՝ տեղ. և անգորական ճագարների տրամախաչումից: Կ. զ.՝ մոտ 4 *կգ*: Մազածածկը սպիտակ է, 92–96 %-ն աղվամազ է: Տարեկան աղվամազատվությունը՝ 450–500 *գ*:

ՍՊԻՏԱԿ ԱՄՈՒՐ (Ctenopharyngodon idella), ***ծածանաձկների*** ընտանիքի ձուկ: Մարմինն իլիկաձև է, երկ.՝ 40–45 (երբեմն՝ մինչև 85) *սմ*, կ. զ.՝ 16 *կգ* և ավելի: Հայաստան ներմուծվել է 1960-ին (սպիտակ հաստաճակատի հետ), հետագայում պարբերաբար բազմացվել է արհեստ. ճանապարհով: ՀՀ կարպային տնտ-յուններում (հիմնականում՝ Արարատյան դաշտի) աճեցվող ամենաբազմաքանակ ձկնատեսակներից է: Ունի արդ. նշանակություն, նաև կենսբ. պայքարի միջոց է:

ՀՀ բնական ջրավազաններում բազմացում դեռևս չի արձանագրվել: Հանդիպում է նաև Արաքս, Ախուրյան, Մեծամոր, Հրազդան գետերում ու նրանց ջրերով անվող ջրանցքներում: Ջերմասեր է: Խոշոր ձուկ է:

ՍՊԻՏԱԿ ԱՐԱԳԻԼ (Ciconia ciconia), ***արագիլների*** ընտանիքի թռչուն: Նստակյաց է: Մինչև 1970-ական թթ. ՀՀ-ում բնադրող էր, չվող: Մարմնի երկ.՝ 100–115, թևերի բացվածքը՝ 155–165 *սմ*, կ. զ.՝ 4 *կգ*: Օդում սավառնում է, թռչում է վիզը ձգած, ոտքերը հետ տարածած: Մնվում է մանր ձկներով, երկկենցաղներով, սողուններով: Ընտանեկան զույգերն անդավաճան են մինչև կյանքի վերջը: Բնադրատեղը սեփականացնելու և պաշտպանելու հարցում անզիջում կռվի է բռնվում, բնից դուրս է նետում այլ զույգի ձվերը: Օգտակար է. ոչնչացնում է գղտ. վնասատուներին: Պահպանվում է օրենքով:

ՍՊԻՏԱԿ ԱՐՋ, *արջերի* ընտանիքի գիշատիչ կաթնասուն կենդանի: Երկ.՝ 2–2,5 (մինչև 3) *մ*, կ. զ.՝ 700–800 *կգ*: Արկտիկ. ֆաունայի բնորոշ ներկայացուցիչ է: Ապրում է Հս. սառուցյալ օվկ-ի հալչող սառույցների և ափամերձ շրջաններում: Ամռանը գաղթում է: Լավ լողում է և սուզվում: Հիմն. կերը փոկերն են: Անհետացման վտանգի տակ էր, սակայն 1970-ական թթ-ից թվաքանակը վերականգնվում է: Պահպանվում է հատկապես Վրանգելի կղզու արգելոցում: Գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՍՊԻՏԱԿ ԲՈՒՀ, **բևեռային բու**, ***բվերի*** ընտանիքի թռչուն: Երկ.՝ 55–65 *սմ*: Ապրում է Հս. սառուցյալ օվկ-ի կղզիներում և Հս. Ամերիկայի ու Եվրասիայի տունդրաներում:

ՍՊԻՏԱԿ ԳԻՇԵՐՆԵՐ, լուսավոր գիշերներ տարվա այն ժամանակաշրջանում, երբ երեկոյան վերջալույսը և առավոտյան արշալույսը հանդիպում են, և ամբողջ գիշեր շարունակվում է աղջամուղջը: Պարզորոշ դիտվում են Հս. և Հվ. կիսագնդերում համապատասխանաբար՝ 59,5° հս. լայն-ից հս և 59,5° հվ. լայն-ից հվ՝ ամառ. արևադարձին մոտ ժամանակ: Ս. գ-ի տևողությունը կախված է վայրի աշխարհագր. լայն-յունից:

ՍՊԻՏԱԿ ԳՎԱՐԴԻԱ, տես *Սպիտակ շարժում*:

ՍՊԻՏԱԿ ԹԶՈՒԿՆԵՐ, ամփոփ (կոմպակտ) աստղեր, որոնց զանգվածները մոտավորապես հավասար են Արեգակի զանգվածին, իսկ շառավիղները՝ շուրջ 0,01 Արեգակի շառավղին, նյութի միջին խտ.՝ 10^8–10^9 *կգ/մ*^{3}: Կազմում են Գալակտիկայի աստղերի ընդհ. թվի 3–10 %-ը, շատերը կրկնակի աստղեր են: 8 Արեգակի զանգվածից փոքր նախն. զանգվածով աստղերի էվոլյուցիայի վերջն. փուլն են, երբ սպառվում են ջերմամիջուկ. վառելիքի պաշարները, աստղերն ընդարձակվում են և ազատվում արտաքին շերտերից: Ս. թ. շարունակում են գոյությունը գրավիտացիոն ուժերի և էլեկտրոնների այլասերված գազի ճնշման կայուն հավասարակշռության շնորհիվ:

ՍՊԻՏԱԿ ԼԱՅՆԱԿՈՒՐՕՔ ՀՆԴԿԱՀԱՎԵՐ, հնդկահավերի ցեղ: Ստացվել է 1960-ական թթ-ին ԱՄՆ-ում՝ հոլ. սպիտակ և բրոնզագույն լայնակուրծք

հնդկահավերի տրամախաչման միջոցով: Աքլորների կ. զ.՝ 8–9 *կգ*, էգերինը՝ 4,5–5,5 *կգ*: Ձվատվությունը՝ 100 և ավելի: Տարածված է Հս. և Հվ. Ամերիկայի, Եվրոպայի երկրներում:

ՍՊԻՏԱԿ ԼՈՒՅՍ, բարդ սպեկտր. կազմ ունեցող լուս. ճառագայթում, բնականոն գունաընկալմամբ մարդկանց մեջ առաջացնում է չեզոք գունազգացողություն: Ս. լ. է տալիս Արեգակի ցրված ճառագայթումը, ինչպես նաև մինչև բարձր ջերմաստիճաններ տաքացրած պինդ և հեղուկ մամինների ճառագայթումը:

ՍՊԻՏԱԿ ԽԱՂՏՏՆԻԿ (Motacilla), *խաղտփտնիկների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է: Մարմնի երկ.՝ 18, թևերի բացվածքը՝ 25–30 *սմ*, կ. զ.՝ 20–27 *գ*: Ապրում է գետափերին, լճափերին, քաղաքներում: Անզգույշ թռչուն է: Շարպիկ ու կտրուկ պտույտներով հետապնդում է զոհին ու կտուցով անվրեպ որսում: Մնվում է անողնաշարներով:

ՍՊԻՏԱԿ ԾՈՎ, միջերկր. ծով Հս. սառուցյալ օվկ-ում՝ Ռուսաստանի եվրոպ. մասի հս. ափերի մոտ: Մակերեսը՝ 90 հգ. *կմ*^{2}, միջին խոր.՝ 67 *մ*, առլզն՝ 350 *մ*: Գոլոլո և Վորոնկա նեղուցներով միացած է Բարենցի ծովին: Խոշոր ծոցերն են Կանդալակշան, Օնեգան, Դվինան, Մեզինը, խոշոր կղզիները՝ Սոլովեցկին, Մորժովեցը, Մուդյուկը: Աղիությունը՝ 24–34,5 ‰: Ձմռանը սառցակալում է: Ս. ծ. են թափվում Հս. Դվինան, Մեզենը, Օնեգան, Նիվան և այլ գետեր: Խոշոր նվինգստ-ներն են Արխանգելսկը, Բելոմորսկը, Օնեգան, Մեզենը, Կանդալակշան նն: Բալթիկ ծովի հետ կապված է Բելոմորսկ-Բալթյան ջրանցքով, իսկ Սև, Ազովի և Կասպից ծովերի հետ՝ Վոլգա-Բալթյան ջր. ուղիներով:

ՍՊԻՏԱԿ ԿՈՔՈՎ, *փասիանների* ընտանիքի թռչուն: Երկ.՝ մինչև 45 *սմ*: Ձմռանը փետրածածկն սպիտակ է, ամռանը՝ դեղնաշիկագույն: Ապրում է Եվրասիայի և Հս. Ամերիկայի տունդրաներում և անտառատափաստաններում: Արդյունագործ. թռչուն է:

ՍՊԻՏԱԿ ՀԱՍՏԱՃԱԿԱՏ (Hypophthalmichthis molitrix), **ցածրաչք ձուկ, *ծածանաձկների*** ընտանիքի ձուկ: Հայաստան ներմուծվել է 1960-ին (սպիտակ ամուրի հետ), հետագայում պարբերաբար բազմացվել է արհեստ. ճանապարհով: Երբեմն հանդիպում է Արաքս, Ախուրյան, Մեծամոր գետերում: Նախընտրում է գետերի դանդաղահոս տեղամասերը: Խոշոր ձուկ է, երկ.՝ 35–40 (երբեմն՝ մինչև 60–70) *սմ*, կ. զ.՝ 8 *կգ* և ավելի: ՀՀ կարպային տնտ-յուններում աճեցվող ամենաբազմաքանակ ձկնատեսակներից է: Ունի արդ. նշանակություն:

ՍՊԻՏԱԿ ՀՈՎԱ, մսամորթատու խոշոր ճագարների ցեղ: Բուծվել է XIX դ-ում Բելգիայում և Գերմանիայում: Ֆլանդր ցեղի մուտացիա է: Մարմնի երկ.՝ 60–65 *սմ*, կ. զ.՝ 5,3–5,8 *կգ*: Սպանդ. ելքը՝ 56–59 %: Պտղատվությունը՝ 7–8 ճագար:

ՍՊԻՏԱԿ ՁՈՒԿ, սպիտակ սաղմոն, սաղմոնակերպների կարգի *սիգաձկների* ընտանիքի գաղթող ձուկ: Հայտնի է 2 ենթատեսակ՝ Ս. ձ. և նելման: Ս. ձ-ան երկ. մինչև 110 *սմ* է, կ. զ.՝ մինչև 20 *կգ*: Ապրում է Կասպից ծովում, բազմացման շրջանում գաղթում է Վոլգա և Ուրալ գետերը: Արդյունագործ. և բազմացման արժեքավոր ձուկ է:

ՍՊԻՏԱԿ ՄՈՒԿ, տնային մուկ-ալբինոս. ժառանգ. փոփոխությունների հետևանքով բացակայում է գունակավորումը: Լաբորատոր կենդանի է:

ՍՊԻՏԱԿ ՅՈՒՂԵՐ, անգույն թափանցիկ նավթայուղեր, ստանում են նավթային ֆրակցիաների կատալիտիկ հիդրմամբ կամ յուղային թորվածքների մաքրմամբ՝ խիտ ծծմբական թթվով կամ ծծմբի (VI) օքսիդով ու սպիտակեցնող հողով: Հայտնի է Ս. յ-ի 2 տեսակ՝ օծանելիք. և վազելին. բժշկ.:

ՍՊԻՏԱԿ ՆԵՂԼՈՍ, Բահր էլ-Աբյադ, Նեղոս գետի անվանումը Սուդանի տարածքում՝ Բահր էլ-Գազալի հետ Բահր ալ-Գաբալի միախառնման տեղից մինչև Կապույտ Նեղոսը: Երկ.՝ 957 *կմ*, ավազանը՝ 1059 հգ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը Խարտումի մոտ՝ 808 *մ*^{3}/*վ*: Նավարկելի է:

ՍՊԻՏԱԿ ՇԱՐԺՈՒՄ, խոշորագույն ռազմաքաղ. շարժում Ռուսաստանում, որը Քաղաքաց. պատերազմի (1917–22) ընթացքում մարտնչել է խորհրդ. իշխանության դեմ: Միավորել է տարասեռ քաղ. ուժեր (չափավոր սոցիալիստներից ու հանրապետականներից մինչև միապետականներ), որոնք միակամ էին բոլշևիկների գաղափարախոսությունը չընդունելու հարցում: Շարժման ռազմ. ղեկ-ների թվում էին Պ. Ն. Վրանգելը, Ա. Ի. Դենիկինը, Ա. Վ. Կոլչակը, Լ. Գ. Կոռնիլովը, Ե. Կ. Միլլերը, Ն. Ն. Յուդենիչը:

ՍՊԻՏԱԿ ՍՈՒՆԿ (Boletus edulis), **թնջուկ ուտելի**, բազիդիավոր սնկերի բոլետայինների ընտանիքի սունկ: ՀՀ-ում հազվադեպ հանդիպում է անտառաշատ գոտիներում: Միկոռիզագոյացնող է, համակեցության մեջ է մտնում կաղնու, սոճու, բոխու հետ: Ամենաարժեքավոր և համեղ սնկերից է, հարուստ է սպիտակուցներով, ունի բարձր սննդ. հատկություններ (հատկապես՝ չորացրած պտղամարմինները): Ունի նաև բուժիչ հատկություններ, հակաբիոտիկ ակտիվություն, պտղամարմինները պարունակում են հակաուռուցք. նյութեր: Ծաղիկների եփուկն օգտագործվում է որպես միզամուղ: Մեղրատու է:

ՍՊԻՏԱԿ ՏԵՆԴ, տես *Ակոռոլային պսիխոզներ*:

ՍՊԻՏԱԿ ՏՈՒՆ, ԱՄՆ-ի նախագահի նստավայրը (1800-ից) Վաշինգտոնում: Կառուցվել է 1792–1829-ին՝ կլասիցիզմի ոճով:

ՍՊԻՏԱԿ ՓՈՔՐ ՏԱՌԵԳ (Egretta garzetta), *տառեղների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 53–85, թևերի բացվածքը՝ 88–95 *սմ*: Հանդիպում է հիմնականում ճահճ. այլ թռչունների խմբերում, հազվադեպ միայնակ է: Թռիչքի պահին վիզը S-աձև ծալում է դեպի մեջքը: Ապրում է ծանծաղ, խոնավ տարածքներում, ձկնաբուծ. լճակներում: Մնվում է ձկներով, երկկենցաղներով, միջատներով: Ձյունասպիտակ, մետաքսափայլ փետրածալքով գեղագիտ. արժեք ունի:

ՍՊԻՏԱԿԱԱՅՏ ՁՐԱԾԻԾԱՌ (Chlidonias hibridus), *ջրածիծառների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող: Մարմնի երկ.՝ 23–25, թևերի բացվածքը՝ 74–78 *սմ*: ՀՀ-ում ընադրման փաստը գրանցվել է 1920-ին: Թռչում են մեծ երամներ կազմած, ջրի մակերեսից ոչ բարձր:

ՍՊԻՏԱԿԱԱՉՔ ՍՈՒՆԶԱԲԱԴ (Aythya nyroca), *բադերի* ընտանիքի ջրլող թռչուն: Նստակյաց է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 38–42, թևերի բացվածքը՝ 63–67 *սմ*, կ. զ.՝ 400–650 *գ*: Լողում է ոչ խորն ընկղմված, հաճախ՝ պոչը վեր ցցած: Սուզվում է հաճախակի: Ապրում է լճերում, ճահճուտներում: Մնվում է ջր. անողնաշարներով: Մարզ. և սիրող. որսաթռչուն է:

ՍՊԻՏԱԿԱԱԶՔՆԵՐ, *ձնաղուկանմանների* կարգի թռչունների ընտանիք: Աչքերի շուրջն առկա է սպիտակ փետուրներից կազմված օղակ: Հայտնի է 80 տեսակ՝ առավելապես Արլ. կիսագնդի մերձարևադարձ. և արևադարձ. շրջաններում: 4 տեսակ և 3 ենթատեսակ գրանցված են ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՍՊԻՏԱԿԱԲԵԳ ՇԱՀՐԻԿ (Sylvia mystacea), *շահրիկների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, տարածված: Փոքր շահրիկ է, պոչը՝ երկար: Աշխույժ է, վտանգ ահազանգող աղմկոտ ձայնը ճոռոցներ է հիշեցնում: Ապրում է կիսաանապատներում, չոր լ-տափաստաններում: Մնվում է անողնաշարներով, պտուղներով, սերմերով:

ՍՊԻՏԱԿԱԳԱԼՈՒԽ ԱՆԳԼ (Gyps fulvus), *ճուռակների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 95–105, թևերի բացվածքը՝ 240–280 *սմ*, կ. զ.՝ 6–8 *կգ*: Խոշոր անգղ է, գլուխը՝ փոքր, թռչում է երկար վիզը ներս քաշած, թևերը՝ լայն բացած, սավառնում մեծ բարձր-յուններում: ՀՀ-ում տարածված է խոշոր ժայռոտ լ-զանգվածներում՝ Սյունիքի մարզից՝ Տավուշի մարզ: Մնվում է լեշերով: Բնական սանիտար է:

ՍՊԻՏԱԿԱԳԼՈՒԽ ԲԱԴ (Oxyura leucocephala), *բադերի* ընտանիքի ջրլող թռչուն: Բնադրող է, չվող, հազվագյուտ: Մարմնի երկ.՝ 43–48, թևերի բացվածքը՝ 62–70 *սմ*, կ. զ.՝ 600–636 *գ*: Կտուցը լայն է, վիզը՝ կարճ, հաստ, պոչը՝ երկար, ուղղաձիգ: Գերազանց լողորդ է: Ապրում է առափնյա փարթամ, խիտ բուսականությամբ լճերում: Գերադասում է Արարատյան դաշտի ձկնաբուծ. լճակները: Մնվում է ջր. բույսերով, սերմերով: Որպես անհետացող տեսակ՝ անհատ. պաշտպ-յան կարիք ունի: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՍՊԻՏԱԿԱԹԵՎ ՁՐԱԾԻԾԱՌ (Chlidonias leucopterus), *ջրածիծառների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող: Մարմնի երկ.՝ 20–30, թևերի բացվածքը՝ 63–67 *սմ*, կ. զ.՝ 74 *գ*: Երամ. թռչուն է, մարդկանց ներկայությունից չի խուսափում: Արձակում է ցածր տոնայնության ծվծվոցներ: Ապրում է ձկնաբուծ. լճակներում, լճերում, դանդաղահոս գետերում: Մնվում է ջր. անողնաշարներով, մանր ձկներով:

ՍՊԻՏԱԿԱՄԹԵՎԻԿՆԵՐ, պելեկանիդային-ներ, *ուղղաթևների* կարգի միջատների ենթակարգ: Երկ. սովորաբար՝ 1–2 *մմ*: Հայտնի է ավելի քան 200 տեսակ՝ առավելապես արևադարձներում: Հատկապես վնասակար են ջերմատնային, ցիտրուս. և մորենու Ս.:

ՍՊԻՏԱԿԱԽԱՅՏԻ ԿԵՌՆԵԽ (Turdus torquatus), *կեռնեխների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է, տարածված: Մարմնի երկ.՝ 23–24, թևերի բացվածքը՝ 38–42 *սմ*, կ. զ.՝ 102 *գ*: Մուգ կեռնեխ է: Աշնանը կազմում է երամներ: Բնակվում է նոսր թփուտներում և ծառերի վրա: Մնվում է անողնաշարներով:

ՍՊԻՏԱԿԱՎԱՐ ԴԵԼՖԻՆ, սովորական դելֆին, *դելֆինանմանների* ընտանիքի ծով. կաթնասուն կենդանի: Երկ.՝ մինչև 2,6 *մ*: Մեջքը և լողակները մուգ գույնի են,

կողքերը՝ մոխրագույն՝ սպիտակ հատվածներով: Ապրում է տաք և բարեխառն ջրերում: Որսն արգելված է:

ՍՊԻՏԱԿԱԿՈՒՐԾՔ ԱՐՋ, **հիմալայան արջ**, *արջերի* ընտանիքի գիշատիչ կաթնասուն կենդանի: Երկ.՝ մինչև 1,7 *մ*, կ. զ.՝ մինչև 150 *կգ*: Ապրում է Ասիայի անտառներում, Հինդուկուշում, Հիմալայներում, Տիբեթի հվ. մասում, Հեռավոր Արևելքի հվ–ում: Լավ մագլցում է ծառերով: Հս. արեալում ձմեռում է փչակներում: Անհետացման վտանգի տակ է:

ՍՊԻՏԱԿԱՀՈՆՔ ԿԵՌՆԵԼԻ (Turdus iliacus), *կեռնեխների* ընտանիքի թռչուն: Ձմեռող է, հազվագյուտ: Մարմնի երկ.՝ 21, թևերի բացվածքը՝ 33–34,5 *սմ*: Հաճախ հանդիպում է այլ կեռնեխների (հատկապես՝ սինակեռնեխների) երամներում: Ապրում է նոսրանտառներում, պտղատու այգիներում, մացառուտներում: Մնվում է անողնաշարներով, սերմերով, հատապտուղներով: Որպես հազվագյուտ տեսակ՝ ՀՀ տարածքում գրանցվել է Երևանի շրջակայքում, Կոտայքի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Արարատի մարզերում:

ՍՊԻՏԱԿԱՀԱՄՈՒԹՅՈՒՆ, կանանց սեռ. օրգաններից արտազատվող թափանցիկ արտադ–յուն, որը սովորաբար սեռ. օրգանների գրգռում չի առաջացնում, սակայն կարող է շատանալ դաշտանից առաջ, հղիության ընթացքում և հետծննդյան շրջանում, նաև սեռ. օրգանների տարբեր հիվանդությունների ժամանակ:

ՍՊԻՏԱԿԱՄԿԱՆԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ մատղաշների, նյութափոխանակության խանգարում, ախտահարում է կմախքի և սրտի մկանները, առաջացնում նրանց ֆունկցիոնալ, կենսաքիմ. և ձևաբան. փոփոխություններ, խիստ գունաթափում: Հիմն. պատճառը կերաբաժնում պրոտեինի, հանք. աղերի ու անհրաժեշտ միկրոտարրերի անբավարարությունն է:

ՍՊԻՏԱԿԱՄՈՐԹ ՆԱՊԱՍՏԱԿ, *նապաստակների* ընտանիքի կաթնասուն կենդանի: Մարմնի երկ.՝ 50–60 (երբեմն՝ 75) *սմ*, կ. զ.՝ մինչև 5,5 *կգ*: Ապրում է Եվրասիայի և Հս. Ամերիկայի տունդրաներում: Կլիմայավարժեցվել է Հվ. Ամերիկայում: Արդյունազործ. կենդանի է (մորթին, միսը):

ՍՊԻՏԱԿԱՆԵՐԿ, 1. սպիտակ գունանյութեր բոլոր ներկերի և արծնների համար, օգտագործվում է ռետինի, պլաստմասսաների, թղթի ներկման համար: Առավել տարածված են ցինկային (ZnO) և տիտանային (TiO_2) U–երը: 2. Հանքային ծագման տարբեր բաղադրության սպիտակ ներկերի ընդհանուր անվանումը:

ՍՊԻՏԱԿԱՊԱՏՅԱՆԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ, սկլերիտ, բնորոշվում է աչքի արտաքին թաղանթի՝ սպիտակապատյանի մեջ խոր ինֆիլտրատի առաջացմամբ, սպիտակապատյանի և շաղկապենու կարմրությամբ, արցունքահոսությամբ, աչքի ցավերով: Պատճառները՝ տուբերկուլոզ, սիֆիլիս, ռևմատիզմ ևն:

ՍՊԻՏԱԿԱՊՈՉ ԱՐԾԻՎ (Haliaeetus albicilla), *ճուռակների* ընտանիքի գիշատիչ թռչուն: Կլոր տարի չվահյուր է, հազվագյուտ: Մարմնի երկ.՝ 70–90, թևերի բացվածքը՝ 200–240 *սմ*, կ. զ.՝ 3–6,5 *կգ*: Խոշոր թռչուն է՝ լայն թևերով: Ապրում է ծառերին մոտ բաց ջրատարածքներում՝ Սևանա լճում, ձկնաբուծ. ավազաններում, ջրածածկ վայրերում: Մնվում է առավելապես ձկներով և այլ ողնաշարավորներով, լեշերով: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՍՊԻՏԱԿԱՊՈՉ ԵՂՏՅՈՒՐԻԿ (Chettusia leucura), *քարադրների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, հազվագյուտ: ՀՀ–ում հայտնաբերվել է 1980–ական թթ–ին Արարատյան դաշտի ձկնաբուծ. լճակներում: Մարմնի երկ.՝ 26–29, թևերի բացվածքը՝ 67–70 *սմ*: Ապրում է ծանծաղ, խոնավ տարածքներում, լճակների տղմոտ ափերին: Մնվում է անողնաշարներով:

ՍՊԻՏԱԿԱՋՐԻ ՍԵԼԱՎ, սելավ ՀՀ Տավուշի մարզում, Աղստևի ձախ վտակը: Սկիզբ է առնում Իջևանի լ–շղթայի հվ–արլ. լանջերից: Երկ.՝ 10 *կմ*, ավազանը՝ 18,5 *կմ*^{2}: Սելավ. կոշտ հոսքի բարձր պարունակությունը պայմանավորում են ավազանի հեշտ հողմահարվող կրաքարերը, դոլոմիտները, մերգելները, ավազաքարերը, տուֆափշրաքարերը ևն: Սելավները սովորաբար կրկնվում են 2–3 տարին մեկ: Առավել ուժեղ սելավներ եղել են 1937, 1959, 1960, 1962, 1964, 1965–ին: Հակասելավ. կառույցներից են խոշոր կամրջ. անցումը և որոշ հատվածների ափապաշտպան հենապատերը:

ՍՊԻՏԱԿԱՋՈՒՐ, գետ Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Վարդենիսի լ–ների հս. լանջերից և Գեղաքար գ–ից 2 *կմ* հս–արլ.՝ աջից միախառնվում Խաչաղբյուր գետին: Երկ.՝ 21 *կմ*:

ՍՊԻՏԱԿԱՍԱՐ, լ–գագաթ Գեղամա լ–շղթայում՝ ՀՀ Գեղարքունիքի ու Արարատի մարզերի սահմանին: Բարձր.՝ 3555 *մ*: Գմբեթաձև հրաբխ. զանգված է: Քարքարոտ է՝ տեղ–տեղ լ–տունդրային բուսականությամբ:

ՍՊԻՏԱԿԱՎԻԶ ԿՏՑԱՐ (Actitis hypoleucos), *մորակտցարների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 19–21, թևերի բացվածքը՝ 38–41 *սմ*, կ. զ.՝ 43–61 *գ*: Ոտքերը, կտուցը կարճ են, պոչը՝ երկար, այն մշտապես տմբտմբացնում է: Ձրի վրա թռչում է ցածր՝ թևերի արագ թափահարումներով: Հմուտ լողորդ է և սուզորդ: Ապրում է լճերի և գետերի ափերին: Մնվում է ջր. անողնաշարներով:

ՍՊԻՏԱԿԱՎԻԶ ՃԱՆՃՈՐՍ (Ficedila albicollis), *ճանճորսների* ընտանիքի թռչուն: Պատահական չվահյուր է: Մարմնի երկ.՝ 13, թևերի բացվածքը՝ 22,5–24,5 *սմ*: Ապրում է սաղարթավոր անտառներում, պտղատու այգիներում, թփուտներում: Մնվում է միջատներով, որոնց որսում է կարճ տարածություն թռչելով կամ կտրուկ գետնին նետվելով:

ՍՊԻՏԱԿԱՎՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ, **Սպիտակավոր վանք**, ճարտ. համալիր ՀՀ Վայոց ձորի մարզի Վերնաշեն գ–ից մոտ 7 *կմ* հս՝ լեռան լանջին: Գմբեթավոր դահլիճ տիպի Սբ Աստվածածին եկեղեցին հիմնադրել է Էչի Պռոշյան իշխանը, որի մահից (1318) հետո շին–յունը 1321–ին ավարտել է որդին՝ Ամիր Հասանը: Եկեղեցուն արմ–ից կից քառակուսի հատակագծով գավիթը (1321–30) կիսավեր է: Արմ. պատին կից է եռահարկ զանգակատունը, որը 1330–ին կառուցել են Հովհաննես և Թաճն ամուսինները:

Եկեղեցու հվ. պատի մոտ ամփոփված է (1986) Գարեգին *Նժդեհի* աճյունը:

ՍՊԻՏԱԿԱՏԱՄՆԵՐ, *արընչակների* ընտանիքի կաթնասունների սեռ: Մարմնի երկ.՝ 4–15, պոչինը՝ մինչև 10 *սմ*: Ատամների գագաթներն սպիտակ են (այստեղից՝ անվանումը): Հայտնի է 150 տեսակ՝ Աֆրիկայում, նաև Եվրասիայում: ՀՀ–ում հանդիպում են կովկաս. երկարապոչ, պարսկ., հայկ. և Դիննիկի Ս., բազմատամնավոր Ս–ից՝ թզուկ. սպիտակատամը, որը համաշխ. ֆաունայի կաթնասունների ամենափոքր ներկայացուցիչն է (մարմնի երկ.՝ 3–5 *սմ*): Կովկաս. երկարապոչ սրընչակը հազվադեպ է, հայկ–ը հանդիպում է միայն Գառնիի շրջակայքում, թզուկայինը՝ Վարդենիսի շրջակայքում:

ՍՊԻՏԱԿԱՐՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, **անեմիա** (< հուն. an – ան և aima – արյուն), հիվանդությունների խումբ. բնորոշվում է արյան մեջ էրիթրոցիտների և (կամ) հեմոգլոբինի քանակի նվազումով, որը հանգեցնում է թթվածնաքաղցի (հիպօքսիա): Պատճառներն են արյան կորուստը (սուր և քրոնիկ. հետարյունահոսական), արյան ուժեղացած քայքայումը (հեմոլիտիկ U.) կամ արյունաստեղծման խանգարումները՝ օրգանիզմում երկաթի անբավարարությունը (հղիների երկաթանբավարարում. U.), քլորոզը, որոշ վիտամինների անբավարարությունը՝ պեռնիցիոզ U., ևն, ողնուղեղի տոքսիկ ախտահարման և այլ դեպքերում: Որոշ U–ներ դասվում են ժառանգ. հիվանդությունների շարքը (օր.՝ մանգաղաձևաբջջ. U.): U–յան ախտանշանները՝ թուլություն, գլխապտույտ, հևոց, սրտխառնոց, մաշկածածկույթների գունատություն ևն:

ՍՊԻՏԱԿԱՓՈՂ ՍՈՒՄԱԿ (Irania gutturalis), *կեռնեխների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 16,5, թևերի բացվածքը՝ 27–30 *սմ*, կ. զ.՝ 28 *գ*: Տարածված է լ–տափաստաններում, կիսաանապատներում և ենթալպ. գոտում: Մնվում է անողնաշարներով, հատապտուղներով: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՍՊԻՏԱԿԱՓՈՐ ԴՈՒԼՈՆ (Pterocles alchata), *դոլոնների* ընտանիքի թռչուն: Պատահական չվահյուր է: Մարմնի երկ.՝ 31–39, թևերի բացվածքը՝ 54–65 *սմ*: Երամային է. մեծ խմբերով հավաքվում են մաքուր ջրով ջրափոսերի մոտ: Ապրում է կիսաանապատներում, ցածրադիր նախալեռներում: Մնվում է հիմնականում բույսերով:

ՍՊԻՏԱԿԱՓՈՐ ՄԱՆԳԱՂԱԹԵՎ (Apus melba), *մանգաղաթևների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 20–22, թևերի բացվածքը՝ 54–60 *սմ*, կ. զ.՝ 110 *գ*: Ցերեկը մշտապես անցկացնում է օդում: Ձայնը դողդոջուն է, ուժգին: Ապրում է ուղղաբերձ ժայռերով լեռներում, քարանձավներում, խոր ձորերում: Մնվում է թռչող անողնաշարներով:

ՍՊԻՏԱԿԱՓՈՐ ՈՋՆԻ (Erinaceus concolor), *ոզնիների* ընտանիքի կաթնասուն կենդանի: Մարմնի երկ.՝ 24–28, պոչինը՝ 2,5–4 *սմ*, կ. զ.՝ 0,6–1,3 *կգ*: Մարմնի մեծ մասը ծածկված է սրածայր փշերով, որովայնը՝ սպիտակավուն, փափուկ մազերով: Ունի լավ զարգացած հոտառություն: Մնվում է միջատներով, որդերով, խխունջներով, մողեսներով, օձերով, մանր կրծողներով, երբեմն՝ թռչունների ձագերով ու ձվերով ևն: Ձմեռ. քուն է մտնում նոյեմբ–ապրիլ: Օգտակար է. ոչնչացնում է մնասատու միջատներին, կրծողներին:

ՍՊԻՏԱԿԵՅՆՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ, անգույն կամ թույլ գունավոր օրգ. միացություններ, որոնք ունեն ԱՄՃ կլանելու և դրանք կապույտի կամ մանուշակագույնի փոխակերպելու հատկություն: Կիրառվում

են գլխավորապես բնական և սինթետիկ մանրաթելերի, թղթի, պլաստմասսաների սպիտակեցման համար:

ՍՊԻՏԱԿԵՑՈՒՄ, տեխնոլոգ. շարժընթաց կամ շարժընթացների համախումբ (օր.՝ քիմ., ջերմ.), երբ գունավորող նյութերի հեռացման կամ քայքայման շնորհիվ մեծանում է նյութի (փայտանյութ, տեքստիլ նյութեր) սպիտակության աստիճանը: Ս. հնարավոր է նաև օպտիկ. սպիտակեցնող նյութերի միջոցով:

ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿԱՇԱՐԺ, տեղի է ունեցել 1988–ի դեկտ. 7–ին՝ տեղ. ժամանակով 11 անց 41 *ր*: Վերնակենտրոնը՝ Սպիտակ ք–ի մոտ: Ըստ միջազգ. 12–բալլանոց սանդղակի՝ ուժգնությունը եղել է 10 բալլ (մագնիտուդը՝ 7,0), Սպիտակ ք–ի շրջակա գյուղերում՝ 10, Գյումրիում, Ստեփանավանում և Ախուրյանում՝ 9, Վանաձորում՝ 8–9, Աշոցքում, Ամասիայում՝ 8, Արթիկում, Մարալիկում, Տաշիրում, Ապարանում, Ծաղկահովտում, Ալավերդիում, Դիլիջանում՝ 7–8, Երևանում՝ 6: Ամբողջովին ավերվել են Սպիտակ ք. և 58 գյուղ: Գյումրիում, Ստեփանավանում, Վանաձորում շարքից դուրս է եկել բնակելի ֆոնդի 70 %–ը: Զոհերի ընդհ. թիվը կազմել է մոտ 25 հզ. մարդ, անօթևան է մնացել մոտ 500 հզ. մարդ: Զոհեր շատ են եղել հատկապես Գյումրիում (մոտ 17 հզ.) և Սպիտակում (մոտ 7 հզ.): Ամբողջովին ավերվել են բազմաթիվ արտադր. օբյեկտներ, դպրոցներ, մանկապարտեզներ, բազմահարկ բնակելի տներ, պատմ. հուշարձաններ: Փլվել են 4 (Սարիարում, Գյուլագարակում, 2–ը՝ Շիրակամուտում), խիստ վնասվել ավելի քան 3 տասնյակ եկեղեցի ու վանք: Ընդհ. վնասը կազմել է մոտ 12 մլրդ *ռ.* (1989):

ՍՊԻՏԱԿԻ ԼԵՌՆԱՆՁՔ, Փամբակի լ–շղթայի կենտր. մասում՝ ՀՀ Լոռու և Արագածոտնի մարզերի սահմանագլխին՝ 2378 *մ* բարձր–յան վրա: Փամբակի հովիտը կապում է Քասաղի հովտին: Ս. լ–ով է անցնում Ապարան–Սպիտակ ավտոճանապարհը:

ՍՊԻՏԱԿՈՒՅՑԱՅԻՆ ԿԵՐԵՐ, պրոտեինի բարձր պարունակությամբ բուս. և կենդ. ծագման կերեր: Հիմն. աղբյուրը՝ կանաչ և չոր խոտ, հացահատիկ, քուսպ, շրոտ ևն:

ՍՊԻՏԱԿՈՒՑՆԵՐ, բնական բարձրմոլ. օրգ. նյութեր, որոնք կազմված են պեպտիդ. կապերով միացած 20 ամինաթթուների մնացորդներից: Մոլ. զանգվածը մի քանի հզ–ից մինչև մի քանի մլն է: Կախված Ս–ի մոլ–ների ձևից՝ տարբերում են թելքային (ֆիբրիլային) և կծիկային (գլոբուլային) Ս.: Հատուկ խումբ են բարդ Ս., որոնց բաղադրության մեջ, բացի ամինաթթուներից, մտնում են նաև ածխաջրեր (գլիկոպրոտեիդներ), նուկլեինաթթուներ (նուկլեոպրոտեիդներ) ևն: Բոլոր կենդանի օրգանիզմներում Ս. մասնակցում են բջիջների և հյուսվածքների կառուցմանը, կենսակատալիզորդներ (ֆերմենտներ ևն), հորմոններ, շնչառ. գունանյութեր (հեմոգլոբիններ), պաշտպ. նյութեր (իմունոգլոբուլիններ) ևն: Ս–ի կենսասինթեզը կատարվում է ռիբոսոմներով և ուղղորդվում է նուկլեինաթթուների գենետիկ կոդով: Ս. մաշկի, բրդի, մետաքսի և այլ բնական նյութերի հիմքն են, մարդու սննդի և կենդանիների կերերի կարևորագույն բաղադրիչը: XX դ–ի 2–րդ կեսից սնդ. և կեր. Ս. ստանալու համար կիրառում են մանրէաբան. սինթեզը:

ՍՊԻՐԻԴՈՆՈՎԱ Մարիա Ալեքսանդրովնա (1884–1941), ռուս. քաղ. գործիչ, սոց–հեղ–ների կուս–յան անդամ (Էսէռ): 1906–ին դատապարտվել է մահապատժի՝ Տամբովի նահզ–ում գյուղաց. ապստամբությանը ճնշող Գ. Ն. Լուժենովսկուն սպանելու համար, որը փոխարինվել է անժամկետ տաժանակրությամբ: 1917–18–ին՝ Համառուս. ԿԳԿ և նրա նախագահության անդամ. ձախ Էսէռների կուս–յան հիմնադիր–առաջնորդներից: 1918–ի հուլիսին՝ ձախ Էսէռների ապստամբության գաղ. ղեկ–ը, որի ճնշումից հետո կալանավորվել է. ներում է շնորհել Համառուս. ԿԳԿ–ն: Գնդակահարվել է, հետագայում՝ արդարացվել:

ՍՊԻՐԻԴՈՎ Գրիգորի Անդրեևիչ (1713–1790), ռուս ռազմածով. գործիչ, ծովակալ (1769): 1768–74–ի ռուս–թուրք. պատերազմի ժամանակ Միջերկր. ծովում գլխավորել է (1769–ից) Էսկադրա: Հաղթել է Չեսմենի մարտում (1770): 1771–73–ին՝ ռուս. նավատորմի հրամ. Հուն. կղզեխմբի շրջանում:

ՍՊԻՐԻՆ Ալեքսանդր Սերգեևիչ (ծ. 1931), ռուս. կենսաքիմիկոս: ՌԳԱ ակադ. (1970): Հետազոտել է ռիբոսոմների կառուցվածքն ու ֆունկցիաները, հայտնաբերել (1964) ինֆորմոսոմները: Կանխատեսել է (1957–ին, Ա. Ն. Բելոզերսկու հետ) տեղեկատվ. կամ մատրիցային ՌՆԹ–ի գոյությունը:

Լենինյան (1976), ԽՍՀՄ (1988), ՌԴ (2000) Պետ. մրց–ներ:

ՍՊԻՐԻՉՈՒԱԼ, (անգլ.՝ spiritual – հոգևոր, կրոնական), ամերիկ. նեգրերի հոգևոր երգեր, երաժշտ. բանահյուսության կարևորագույն ժանրը: Ծագել է ԱՄՆ–ի հվ. նահգ–ներում, տարածվել 1870–80–ական թթ–ին: Արտահայտում են ողբերգ. միայնության, հոգևոր տառապանքի տրամադրություններ:

ՍՊԻՐԻՏԻԶՄ (լատ.՝ spiritus – հոգի, ոգի), միստիկ ուղղություն, որի հիմքում մահացածների հոգիների անդրշիրիմյան գոյության մասին հավատն է: Ս. բնորոշվում է վերջիններիս հետ «շփվելու» արարողությամբ (ֆիզ. մեդիումիզմի հնարներ, օր.՝ «սեղանի պտտմամբ» ևն): Զևավորվել է ԱՄՆ–ում XIX դ–ում:

ՍՊԻՐԻՏՈՒԱԼԻԶՄ (լատ.՝ spiritualis – հոգևոր, spiritus – հոգի, ոգի), փիլ. հայեցակետ, որը ոգին համարում է իրականության նախահիմք, մատերիայից դուրս և դրանից անկախ գոյություն ունեցող անմարմին սուբստանց: Որպես փիլ. հասկացություն ներմուծել է Վ. Կուպերը XIX դ–ում: Հետագայում Ս. են սկսել անվանել XIX–XX դդ–ի ֆրանս. և իտալ. փիլ–յան մի շարք դպրոցներ և ուղղություններ:

ՍՊԻՐՄԵՆ (Spearman) Չառլզ Էդուարդ (1863–1945), անգլիացի հոգեբան, մշակել է հոգեբ–յան մեջ գործոնային վերլուծության հիմքերը:

ՍՊԻՐՈՒԽԵՏՆԵՐ (< հուն. speira – գալար և chaita – մազեր), բակտերիաների կարգ. բջիջներն ունեն ոլորված թելերի տեսք: Շարժուն են: Ապրում են հողում, կանգնած ջրերում և կեղտաջրերում: Ախտածին Ս. սիֆիլիսի, հետադարձ տիֆի, լեպտոսպիրոզի, սպիրոխետոզների և այլ հիվանդությունների հարուցիչներ են:

ՍՊԻՐՏ ԲԱՅԱՐՋԱԿ, էթիլ սպիրտ, որը գործնականորեն ջուր չի պարունակում, $t_{եռ.}$՝ 78,39°C: Ստանում են 4,5 % ջուր պարունակող սպիրտի բազմաթորուցքով, ջուրը բենզոլի հետ (ազեոտրոպ խառնուրդ) թորելով կամ նախ նատրիումի հետ կապելով, ապա թորելով, նաև այլ եղանակներով:

ՍՊԻՐՏԱՅԻՆ ԼԱՔԵՐ, բնական և սինթետիկ խեժերի 30–40–%–անոց լուծույթներն էթիլ սպիրտում: Օգտագործվող խեժերը շելլաք, սանդարակ, բևեկնախեժ, ֆենոլ–ֆորմալդեհիդային խեժեր և թաղանթ առաջացնող նյութեր են:

ՍՊԻՐՏԱՉԱՓ, ջր. լուծույթում էթիլ սպիրտի պարունակությունը չափող գործիք: Չափում է լուծույթի խտությունը, որը կախված է սպիրտի պարունակությունից: Սանդղակն աստիճանավորված է սպիրտի ծավալ. տոկոսներով:

ՍՊԻՐՏՆԵՐ, ալկոհոլներ, օրգ. միացություններ, որոնց մոլ–ները պարունակում են ածխածնի հագեցած ատոմին միացած հիդրօքսիլ (OH) խմբեր: Ըստ հիդրօքսիլ խմբերի թվի՝ տարբերում են միատոմանի, երկատոմանի (գլիկոլներ), եռատոմանի (գլիցերիններ) և բազմատոմանի Ս.: Միատոմանի Ս., ըստ հիդրօքսիլ խմբի դիրքի, լինում են առաջնային (RCH_2OH), 2–րդային (R_2CHOH), 3–րդային (R_3COH): Ս. առաջացնում են ալկոհոլատներ, եթերներ, էսթերներ ևն: Ստանում են ածխաջրածինների օքսիդացմամբ, օլեֆինների հիդրատացմամբ, սննդամթերքի խմորմամբ, բուս. նյութերի հիդրոլիզով և այլ եղանակներով: Լուծիչներ են և հումք՝ ներկանյութերի, սինթետիկ խեժերի, լվացամիջոցների և դեղանյութերի արտադր–յան մեջ:

ՍՊԻՑԻՆ Վիկտոր Իվանովիչ (1902–1988), ռուս քիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1958): Սոց. աշխ. հերոս (1969): Աշակել է անդրուրան. տարրերի անջատման եղանակներ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1986):

ՍՊԼԻՏ (Split), ք. Խորվաթիայում: Բն.՝ 178 հզ. (2010): Նվինգստ՝ Ադրիատիկ ծովի ափին: Ունի օդանավակայան: Ս–ում են Մեշտրովիչի պատկերասրահը, հնագիտ. թանգարանը, հին Խորվաթիայի թանգարանը, Դիոկղետիանոս կայսեր պալատի մնացորդները (մոտ՝ 300, ներառում է դամբարան, VII դ–ի տաճար), XV–XVI դդ–ի պալատներ և տներ, գոթ. Ռատուշան (XV դ.), եկեղեցիներ (XI–XVI դդ.): Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է: Մերձակայքում են Սալոնա հնագույն ք–ի ավերակները (մ. թ. ա. II– մ. թ. IV դդ.):

ՍՊՈՆԴԻԼԻՍ, ողնաշարաբորբ, հանդիպում է հատկապես *տուբերկուլոզի* ժամանակ: Տուբերկուլոզ. Ս–ի դեպքում ողների քայքայումն ուղեկցվում է ցավերով, ողնաշարի շարժողության կայուն տեղային սահմանափակմամբ, կուզի, խուղակների, թարախակույտերի առաջացմամբ:

ՍՊՈՆԴԻԼՈԱՐԹՐԻՏ ԱՆԿԻԼՈԶԱՅՆՈՂ, Բեխտերևի հիվանդություն, մարդու ողնաշարի միջողնային հոդերի և կապանային ապարատի քրոնիկ. համակարգ. բորբոքում: Դրսևորվում է ցավերով, ողնաշարի անշարժությամբ, կիֆոզով:

ՍՊՈՆԴԻԼՈԶ (հուն.՝ spondylos – ողնաշար), ողնաշարի կազմափոխության ննուցախանգարումային հիվանդություն. բնորոշվում է ողի մարմնի ծայրերին ոսկր. գերաճումների ի հայտ գալով:

ՍՊՈՐԱԴՆԵՐ, 1. **Հարավային**, կղզիներ Էգեյան ծովում՝ Փոքր Ասիա թ–կղզու հվ–արմ. ափին՝ Հունաստանի կազմում: Տարածքը՝ 3,5 հզ. *կմ*²: Հիմն. կղզիներն են

Ռոդոսը, Սամոսը: Բարձր.՝ 1436 *մ* (Սամոս կղզում): Բազմաթիվ են հինհուն. մշակույթի հուշարձանները: 2. **Հյուսիսային**, տարածքը՝ 540 *կմ*^{2}: Կա 77 կղզի, ամենամեծը՝ Սկիրոս (տարածքը՝ 210 *կմ*^{2}, բարձր.՝ 792 *մ*): 3. **Կենտրոնապոլինեզյան**, բուստ. կղզիներ Խաղաղ օվկ–ի կենտր. մասում՝ Կիրիբատի պետության կազմում: Տարածքը՝ մոտ 500 *կմ*^{2}:

ՍՊՈՐԱԿԵՆԴԱՆԻՆԵՐ (Apicomplexa), **սպորոզոա**, մակաբույծ նախակենդանիների դաս: Բնորոշ է ***ակրոնդների հաջորդականությունը*** և անսեռ ու սեռ. բազմացման հերթագայությունը: Կենսաշրջանի հիմն. փուլերն են շիզոգոնիան (անսեռ բազմացում), գամոգոնիան (գամետների առաջացում և բեղմնավորում) և սպորոգոնիան (սպորների և սպորոզոիտների ձևավորումը զիգոտից): Հայտնի է Ս–ի մոտ 2000 տեսակ: Մարդու և կենդանիների մի շարք ծանր հիվանդությունների (մալարիա, տոքսոպլազմոզ, կոկցիդիոզ ևն) հարուցիչներ են:

ՍՊՈՐԱՆԳԻՈՒՄ (< *սպորներ* և հուն.՝ angeion – անոթ, զետեղարան), միաբջիջ (ստորակարգ) կամ բազմաբջիջ (բարձրակարգ) բույսերի բազմացման օրգան, որտեղ գոյանում են ***սպորները***:

ՍՊՈՐԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐ, հիմնականում ***սպորներով*** բազմացող և տարածվող բույսեր: Դրանց մեծամասնությունը սպորի վիճակում դիմանում է արտաքին անբարենպաստ պայմաններին: Որոշ Ս. բ. (օր.՝ բազմաթիվ քարաքոսեր) հազվադեպ են սպոր առաջացնում և բազմանում են հիմնականում մարմնի առանձին հատվածների անջատման միջոցով: Երբեմն Ս. բ. բաժանում են ստորակարգերի (ջրիմուռներ, բակտերիաներ, սնկեր, քարաքոսեր) և բարձրակարգերի (պտերներ, ձիաձետներ, գետնամուշկներ, որոշ բրածո բույսեր ևն):

ՍՊՈՐՆԵՐ (հուն.՝ spora – ցանք, սերմ), անսեռ վերարտադրող. գոյացություններ՝ կազմված մեկ կամ մի քանի բջիջներից: Որպես կանոն՝ ծածկված են արտաքին միջավայրի ազդեցություններին դիմակայող պինդ թաղանթով: Զարգանում է սնկերի, ջրիմուռների, մամոռանմանների, պտերանմանների և այլ բույսերի, նաև բակտերիաների ու մակաբույծ նախակենդանիների (սպորավորներ) մոտ: Ծառայում են անբարենպաստ պայմաններում օրգանիզմների բազմացմանն ու պահպանմանը (բակտերիաների մոտ): Ս–ի բրածոներով հաստատում են նստվածքաշերտերի տարիքը:

ՍՊՈՐՈՖԻԼՆԵՐ (< *սպորներ* և հուն.՝ phyllon – տերև), ձիաձետների, գետնամուշկանմանների և բարձրակարգ այլ բույսերի տեսակափոխված (երբեմն՝ լուսասինթեզի ֆունկցիա չկատարող) տերևը, որի վրա զարգանում են անսեռ բազմացման օրգանները՝ սպորանգիումները: Մեգասպորանգիումակիր Ս. կոչվում են մեգասպորոֆիլներ, միկրոսպորանգիումակիր Ս.՝ միկրոսպորոֆիլներ: Ս. են կոչվում նաև ջրիմուռների թալոմի սպորակիր տերևանման օրգանը:

ՍՊՈՐՈՖԻՏ (< *սպորներ* և հուն.՝ phyton – բույս), անսեռ սերունդ կամ բույսերի կենս. ցիկլի շրջան՝ զիգոտից մինչև սպորների առաջացումը: Զարգացման ցիկլում հերթափոխվում է գամետոֆիտի հետ: Բնորոշ է քրոմոսոմների կրկնակի (դիպլոիդ) հավաքակազմը:

ՍՊՈՐՏ (անգլ.՝ sport, հին ֆրանս.՝ desport – խաղ, զվարճանք), ֆիզ. կուլտուրայի բաղկացուցիչ մաս, ֆիզ. դաստիարակության միջոց և եղանակ, տարբեր ֆիզ. վարժությունների մրցույթների կազմակերպման համակարգ: Լինում են թիմ. և անհատ., սեղանի (շախմատ), խաղաքարային և այլ սպորտաձևեր: Կան նաև սիրող. և պրոֆեսիոնալ (եկամտի աղբյուր է նաև մարզիկների համար), ազգ. Ս–ի ձևեր:

ՍՊՈՐՏԱՅԻՆ ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, բժշկագիտ–յան բաժին. ուսումնասիրում է ֆիզկուլտուրնիկների և մարզիկների առողջության ու ֆիզ. զարգացման խնդիրները, կատարում սպորտ. պարապմունքների հետ կապված հիվանդությունների ախտորոշում, բուժում և կանխարգելում: Ս. բ–յան միջազգ. ֆեդերացիայում (FIMS, հիմն.՝ 1928) ընդգրկված է 50 երկիր (1993):

ՍՊՈՒՔԱՆ (Spokane), ք. ԱՄՆ Վաշինգտոնի նահգ–ում: Բն.՝ 204 հզ., ագլոմերացիայում՝ 460 հզ. (2010): Ունի օդանավակայան. համալսարան: Տնտ–յան հիմն. ճյուղերն են ավիացիոն–տիեզ., այլումինի արտադրյունը, բժշկության, կենսատեղեկատվ. տեխնոլոգիաները:

«ՍՊՈՒ ՄԻԳԱԲՐՈՆ» ՍՊԸ, ծխախոտի արտադրման և իրացման ձեռն. ՀՀ–ում: Հիմնադրվել է 1999–ին: Արտադրանքի մոտ 80 %–ն արտահանվում է ԱՄՆ, ԱՊՀ և Եվրոպ. երկրներ: Կենտրոնատեղին՝ Երևանում:

ՍՊՐՈՒ (անգլ.՝ sprue), մարդու անհայտ ծագման քրոնիկ. հիվանդություն, որն ուղեկցվում է համաո լուծով, լեզվաբորբով, սակավարյունությամբ, հյուծումով ևն: Առավելապես տարածված է արևադարձ. և մերձարևադարձ. կլիմայով գոտիներում:

ՍՊՈՒՆԳԱՆՄԱՆ ՀՅՈՒՍՎԱԾՔ, տերևի հիմն. հյուսվածքը, փուխր հյուսվածք (մեզոֆիլ), որին հատուկ են մեծ միջբջջ. տարածությունները: Կատարում է գազափոխանակության, գոլորշիացման, լուսասինթեզի ֆունկցիաներ: Սովորաբար զարգացած է տերևի ստորին մակերեսին:

ՍՊՈՒՆԳՆԵՐ, բազմաբջիջ, առավելապես՝ ծով. անողնաշարների պարզագույն տիպ: Ունեն կմախք. գոյացություններ՝ կրաքար. և կայծքարահող. ասեղների (սպիկուլներ) կամ սպոնգին սպիտակուցի թելքերի տեսքով: Բողբոջելով առաջացնում են գաղութներ: Միայնակ Ս–ի բարձր. մի քանի *մմ*–3 *սմ* է, գաղութներինը՝ մինչև 1,5 *մ*: Հայտնի է 3 դասի (կրաքար., վեցճառագայթանի և սովոր. Ս.) մինչև 3 հզ. տեսակ: Տարածված են մերձափնյա գոտուց մինչև 8500 *մ* խոր–ներ, այդ թվում՝ մոտ 350 տեսակ՝ հս. և հեռավորարլ. ծովերում: Առավել պարզունակ բազմաբջիջ օրգանիզմներից են:

ՍՌՆԱԿ (բուսաբ.), ծաղկի վարսանդի միջին՝ ծաղկափոշին կրող մասը:

ՍՍ [գերմ.՝ SS (Էսէս), Schutzstaffeln – պահնորդական ջոկատներ], Գերմանիայի նացիոնալ–սոց. բանվ. կուս–յան հատուկ ռազմականացված կազմ–յուն, նացիստ. վարչակարգի գլխ. հենակետերից: 1925–ին գրոհային ջոկատներով (ՍԱ) եղել է «Ֆյուրերի անձնական պահակախումբը», 1934–ից՝ ինքնուրույն կազմ–յուն: 1929–ից ՍՍ գլխավորել է Հ. *Հիմլերը*: Ունեցել է կազմակերպ. բարդ կառուցվածք, եղել է, փաստորեն, «պետության մեջ պետություն»: Հսկել է ոստիկանաբռնապետ. ապարատը և ուղղորդել նրա աշխ–ը: ՍՍ–ին ենթակա են եղել համակենտրոնացման և մահվան ճամբարները: Իր տրամադրության տակ ունեցել է սեփ. զորամասեր (ՍՍ զորքեր): ՍՍ Գերմանիայում և նվաճված տարածքներում զանգված. ահաբեկչության գլխ. իրագործողն էր: Նյուրնբերգի միջազգ. զինտրիբունալը ՍՍ–ին դատապարտել է որպես հանցավոր կազմ–յան:

ՍՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, հայ հաս–քաղ. և հոգևոր. հոսանք XVII դ–ում: Ս. ***խոջայության*** գաղափարախոսությունն էր, որը պայքարում էր էջմիածնականների (հենվում էր ***չելեբիության*** վրա) դեմ, և փորձում դավան. զիջումների գնով հասնել կաթոլիկ Եվրոպայի միջամտությամբ Հայաստանի ազատագրմանը: Առաջնորդներն էին Սսի կաթողիկոս Խաչատուր Գ Գաղատացին և *Եղիազար Ա. Այնթապցին*: Պայքարը մեղմացել է, երբ Սբ Էջմիածնի միաբանությունն Ամենայն հայոց կաթողիկոս է ընտրել Եղիազար Ա. Այնթապցուն:

ՍՍԻ ԺՈՂՈՎՆԵՐ, գումարվել են XIII–XIV դդ–ում Կիլիկ. Հայաստանի Սիս մայրաքաղաքում՝ դավանաբան. և քաղ. կարևոր խնդիրների առթիվ: Տեղի է ունեցել 8 ժողով: 1–ինը (1204) կաթողիկոս ***Հովհաննես Ձ Սաեցու*** նախաձեռնությամբ ընդունել է Հայոց եկեղեցու կանոնադրությունը լրացնող 8 կետ: 2–րդ ժողովը (1243), կաթողիկոս ***Կոստանդին Ա. Բարձրբերդցու*** գլխավորությամբ, սահմանել է 25 կանոն՝ հոգևորականության մեջ տարածված չարաշահումների և եկեղեց. անկարգության դեմ: 5–րդ ժողովը (1307) քննել է Լևոն Դ թագավորի՝ Եվրոպայից ռազմ. օգնության դիմաց լատինադավանություն ընդունելու՝ Կղեմես V պապի պահանջը: Լևոն Դ–ի, թագավորահայր Հեթումի (*Հեթում Բ*) և կաթողիկոս Կոստանդին Գ Կեսարացու ճնշմամբ ընդունվել են դավանաբան. և ծիս. նոր կանոններ, որոնցով Հայոց եկեղեցին փաստորեն միանում էր կաթոլիկ եկեղեցուն: Ժողդ–ը և Մեծ Հայքի հոգևորականությունը չեն ընդունել այդ կանոնները: Նոր թագավոր Օշինը հրավիրել է 6–րդ ժողովը (1309)՝ վերահաստատելու նախորդի որոշումները, սակայն մասնակիցներն ընդունել են Հայոց եկեղեցու ինքնուրույնությունն ապահովող կանոններ: Օշինը բանտարկել և հալածել է ժողովականներին, հասել 1307–ի (5–րդ) ժողովի կանոնների վերահաստատմանը (տես *Ադանայի ժողով 1316*): 8–րդ ժողովը (1361), Հռոմի պապերի քաղ–յունից դժգոհ Կոստանդին Դ թագավորի և կաթողիկոս Մեսրոպ Ա. Արտազեցու նախաձեռնությամբ, չեղյալ է հայտարարել Սսի 5–րդ (1307) և Ադանայի (1316) ժողովների որոշումները, վերահաստատել Հայոց եկեղեցու անկախությունն ապահովող դավանաբան. և ծիս. նախկին կանոնները:

ՍՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ, տես *Կաթողիկոսություն Մեծի Տանն Կիլիկիո*:

ՍՍԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ (Կիլիկիայի թագավոր. գրադարան), մշակութ. կենտրոն, որտեղ հավաքվել ու պահվել են Կիլիկիայի հայկ. դպրոցներում ու գրչության կենտրոններում ստեղծված մշակութ. արժեքները, համալրվել է նվիրատվություններով: Առաջին ձեռագիրը 1222–ի Ավետարան է: Ուշագրավ է *«Ութ մանրանկարիչների Ավետարան»*–ը: Ս. մ–ից մեզ հասած մի շարք ձեռագիր մատյան–

ներ պահվում են Երևանի, Երուսաղեմի, Վենետիկի և Վիեննայի մատեն-ներում:

ՍՍԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 1194, կնքվել է Սիս ք–ում՝ Կիլիկ. Հայաստանի և դրացի Անտիոքի դքսության միջև՝ 2 երկրների միջև սահման. վեճերը կարգավորելու և բարեկամություն հաստատելու նպատակով: Պայմանագիրն ստորագրվել է Երուսաղեմի թագավորի միջնորդությամբ: Դուքսն ընդունել է Հայոց իշխանապետի գերագահությունը, վերադարձրել դեռևս 1185–ին զավթած հայկ. սահմանամերձ հողերը, ինչպես նաև Ասորվոց դրունք ռազմ. հանգույցը:

ՍՎԱՋԻ (ինքնանվանումը՝ ամա–սվազի, ամա–նգվանե), ժողդ, *բանտու* խմբից: Սվազիլենդի հիմն. բնակչությունը (1 մլն, 2010): Ապրում են նաև ՀԱՀ–ում (1,2 մլն), Լեսոթոյում (50 հզ.), Զիմբաբվեում (70 հզ.), Մոզամբիկում: Լեզուն՝ սվազի: Հավատացյալները հիմնականում քրիստոնյա են, կան նաև ավանդ. հավատալիքների հետևորդներ:

ՍՎԱԶԻԼԵՆԴ (Swaziland), **Սվազիլենդի թագավորություն** (Kingdom of Swaziland), պետություն Հվ. Աֆրիկայում: Սահմանակից է Մոզամբիկին և ՀԱՀ–ին: Տարածքը՝ 17,4 հզ. *կմ*², բն. 1 մլն (2009): Մայրաքաղաքը՝ Մբաբանե: Պետ. լեզուները՝ սվազի և անգլ.: Կառավարման ձևը՝ միապետ.: Պետության գլուխը թագավորն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Հավատացյալների մեծ մասը քրիստոնյա է, կան նաև ավանդ. հավատալիքների հետևորդներ: Բաժանված է 4 վարչ. օկրուգների: Անդամակցում է ՄԱԿ–ին, Ազգերի համագործակցությանը, Աֆրիկ. միությանը: Զարգացող երկիր է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 4,4 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է ոչ ալկոհոլ. խմիչքների խտանյութ, շաքար, պահածոյացված մրգեր, ցիտրուսներ, թաղանթանյութ, տեքստիլ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, դեղորայք, նավթամթերք, սննդամթերք, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ լիլանգենի:

1830–ական թթ–ին ստեղծվել է սվազի ցեղերի միավորում: 1894–ին Ս–ի տարածքը նվաճել են բուրերը, 1903–ին Ս. դարձել է Մեծ Բրիտանիայի պրոտեկտորատ: 1921–ին սվազիների հակագաղութ. շարժումը գլխավորել է գերագույն առաջնորդ Սոբհուզա II–ը: 1963–ին Ս. ստացել է սահմանափակ ինքնավարության իրավունք, 1967–ին հռչակվել է սահմանադր. միապետություն Բրիտ. համագործակցության շրջանակներում՝ Սոբհուզա II թագավորի գլխավորությամբ: 1973–ին թագավորը վերացրել է սահմանադրությունը, արձակել է խորհրդարանը, արգելել է կուս–յունների գործունեությունը: 1978–ի սահմանադրությամբ վերստեղծվել է խորհրդարանը: 1982–ին մահացել է Սոբհուզա II–ը, 1986–ին թագավոր է հռչակվել նրա որդի Մսվատի III–ը: 2011–ին երկրում տեղի են ունեցել ցույցեր՝ թագավորի հրաժարականի պահանջով, որին մեղադրել են պետ. գանձարանը թալանելու մեջ: Բայց դրանք ճնշվել են:

ՍՎԱՅԼՅԱՆ Գառնիկ Մարկոսի (1904–1948), գրող, հրապարակախոս, հաս. գործիչ, երգիծանկարիչ: Վերժինե *Սվազյանի* հայրը: Եղել է ՀՕԿ–ի եգիպտահայ մասնաճյուղի հիմնադիրներից և փոխնախագահը: Երգիծանկարներ է տպագրել *«Սաւառնակ»* և ժամանակի այլ պարբ–ներում: 1943–ին Ալեքսանդրիայում հիմնադրել և գլխավորել է «Սևան» գրգեղ. միությունը: 1947–ին հայրենադարձել է: Հեղինակ է «Ներգաղթը» (1936) պիեսի, նաև գր., հրապարակախոս. հոդվածների («Հայրենիքիս համար», 1965):

ՍՎԱՅԼՅԱՆ (Սվազլը) Միհրան (1863–1935), հրապարակախոս, հրտ–խմբ.: 1888–92–ին՝ *«Հայաստան»* (Լոնդոն), 1917–19–ին՝ «Արմինիոն Հերալդ» (անգլ., Բոստոն) պարբ–ների հիմնադիր–խմբ.: Ամերիկայի հայ ազգ. միության (1917, Բոստոն) հիմնադիր–նախագահ: Ս. եղել է ԱՄՆ–ի նախագահ Վուդրո Վիլսոնի խորհրդականը հայկ. տարածքների նկատմամբ ամերիկ. մանդատի ստանձնման գործում: «Ի յիշատակ Միհրան Սվազլեանի» (1944) գրքում անդրադարձել է Հայ դատին, հայ հաս–քաղ. կյանքին:

ՍՎԱՅԼՅԱՆ Վերժինե Գառնիկի (ծ. 1934), բանագետ, բանահավաք: Բանասիր. գիտ. դ–ր (1995): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2016): Գառնիկ *Սվազյանի* դուստրը, Ռոբերտ *Ավագյանի* կինը: Կազմել է «Հայ ժողովրդական հեքիաթների» գիտ. հրտ–յան «Արցախ–Ուտիք» (1973), «Տարոն–Տուրուբերան» (1984), «Վան–Վասպուրական» (1998) հատորները, գրառել (ձայնագրել ու տեսագրել) և հրտ–յան է պատրաստել «Մուսա լեռ» (1984), «Կիլիկիա: Արևմտահայոց բանավոր ավանդությունը» (1994), «Պոլսահայոց բանահիւսութիւնը» (2000) բանահյուս. նյութերի «Մեծ եղեռն: Արևմտահայոց բանավոր վկայություններ» (1995), «Մեծ եղեռնը արևմտահայոց հուշապատումներում և թուրքալեզու երգերում» (հայ. և ռուս.՝ 1997, անգլ.՝ 1999, թուրք.՝ 2005), «Հայոց ցեղասպանություն: Ականատես վերապրողների վկայություններ» (2000, հայ. և անգլ.՝ 2011, թուրք.՝ 2013) ժող–ները, «Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի պատմական հիշողությունը» (հայ., անգլ., ֆրանս., գերմ., ռուս., թուրք.՝ 2005), «Մուսա լեռան հերոսամարտը. ականատես վերապրողների վկայություններ» (հայ., անգլ., 2015) երկերը:

ՀՀ նախագահի մրց. (2006), ՀՀ «Մովսես Խորենացի» (2013) մեդալ, ՀՀ վարչապետի (2005), ՀԱԳ «Հակոբ Մեղապարտ» (2009) հուշամեդալներ:

ՍՎԱՋՅԱՆ Հենրիկ Սուրենի (ծ. 1938), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1991), պրոֆ. (2003): ՀՀ բանակի գնդ. (2002): Աշխ–ները հիմնականում վերաբերում են Աղվանքի պատմությանը [«Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից VIII դարը ներառյալ)», 2006, ևն]:

ՍՎԱԹԱՄԻ, **Շանթոու**, ք. Չինաստանի Գուանդաու պրովինցիայում՝ Հանցզյան գետի Հվ–չին. ծով թափվելու տեղում: Բն.՝ 1,5 մլն, ագլոմերացիայում՝ 4,8 մլն (2010): Տրանսպորտ. հանգույց է, ծով. նվիճգստ: Ունի օդանավակայան: Մանկ. խաղալիքների արտադր–յան և արտահանման խոշոր կենտրոն է:

ՍՎԱԽՉՅԱՆ Մելիքսեթ Գրիգորի (1916–1946), բեմանկարիչ: 1941–46–ին՝ Լենինականի պետ. թատրոնի գլխ. նկարիչ: Ձևավորել է Դ. Դեմիրճյանի «Երկիր հայրենի» (1943), Վ. Շեքսպիրի «Տասներկուերորդ գիշերը» (1944), Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ» (1946, երեքն էլ՝ Լենինականի թատրոն), Վրթ. Փափազյանի «Ժայռ» (1944), Վ. Վաղարշյանի «Վանքաձոր» (1945, երկուսն էլ՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոն) և այլ ներկայացումներ:

ՍՎԱՃՅԱՆ Հարություն Գրիգորի, **Մեչուխեչա** (1831–1874), հաս–քաղ. գործիչ, հրապարակախոս, խմբ.: 1856–62, 1870–72–ին՝ *«Մեղու»* հանդեսի հիմնադիր–խմբ.: Մասնակցել է արևմտահայերի Ազգ. սահմանադրության (1860) մշակմանը: Հեղինակ է «Հայաստան Մայր» արձակ պոեմի, «Արիք Հայկազունք» բանաստեղծության (դարձել է Ազգ. սահմանադրության հիմնը), «Քաթինքա» վիպակի, «Առանձար Ամատունի» պատմ. ողբերգության, «Մատնութիւն» (1861) պամֆլետի, «Կենսագրութիւն Պօղոս աղայի Օտեան» (1862) աշխ–յան, «Դրախտահարսն Մարի Տայեան» (1875) բանաստեղծությունների ժող–ի: Կատարել է թարգմ–յուններ:

ՍՎԱՃՅԱՆ–ԳԱՐԱԳԱՇՅԱՆ Արաքս Հակոբի (1909–1997), երգչուհի (քնար. սոպրանո): Երգել է Բուխարեստի օպեր. թատրոնում (Մարգարիտ՝ Շ. Գունոյի «Ֆաուստ», Մանոն՝ Ժ. Մասնեի «Մանոն Լեսկո», Վիոլետա՝ Ջ. Վերդիի «Տրավիատա», ևն) և «Կոմիտաս» երգչախմբում: Կամեր. երկացանկում՝ Ֆ. Շուբերտի, Ռ. Շումանի, Ֆ. Լիստի և ուր. երկերից:

ՍՎԱՄԵՐԴԱՄ (Svammerdam) Յան (1637–1680), նիդեռլանդացի բնախույզ, գիտ. մանրադիտման (միկրոսկոպիա) հիմնադիրներից: Աշխ–ները վերաբերում են կենդանիների, հատկապես՝ միջատների անատոմիային (կերպարանափոխության տարբեր փուլերում նրանց կառուցվածքին): Ս. ժխտել է ինքնածնումը:

ՍՎԱՆԵԹԻԱ, պատմ. մարզ Վրաստանում: Գլխ. կովկաս. լ–շղթայի հվ–արմ. լանջին: Սվանեթիի լ–շղթայով բաժանված է Վերին և Ներքին Ս–ների:

ՍՎԱՆԵԹԻԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Վրաստանում՝ Ինգուր և Ցխենիսծղալի գետերի վերնագավառում: Երկ.՝ 85 *կմ*, բարձր.՝ 4008 *մ* (Լայլա լ.): Կատար. մասում կան սառցադաշտեր:

ՍՎԱՆՆԵՐ, վրացիների ազգագր. խումբ: Բնակվում են Սվանեթիայում: Քարթվել և մեգրելալազ ցեղերի հետ կազմել են վրաց. ժողդ–ի հիմքը: Խոսում են վրաց. և սվան.: Ս–ի ազգանուններն ունեն –անի վերջավորություն:

ՍՎԱՍՅԱՆ Կարեն Արայի (ծ. 1948), փիլ.: Փիլ. գիտ. դ–ր (1982): Աշխ–ները վերաբերում են նոր շրջանի փիլ–յան դասականներին (Նիցշե, Բերգսոն, Կասիրեր և ուր.), գիտապաշտ. փիլ–յան քննադատությանը («Ա. Բերգսոնի ինտուիտիվ փիլիսոփայության գեղագիտական էությունը», 1978, «Սիմվոլի պրոբլեմը ժամանակակից փիլիսոփայության մեջ. քննադատություն և վերլուծություն», 1980, երկուսն էլ՝ ռուս.): Հումբոլդտի անվ. մրց. (1994):

ՍՎԱՏՈՊԼՈՒԿ Տ. (Svatopluk T., Սվատոպլուկ Տուրեկ, 1900–1972), չեխ գրող: Հեղինակ է «Հաջողության հրեշտակները» (1937), «Տունը Բեթղեհեմում» (1942), «Առանց ղեկավարի» (1953), «Շվեդական մարմար» (1961) և այլ վեպերի, «Չարի և բարու մասին» (1939), «Մարդու երեսը» (1941) պատմվածքների ժող–ների: Հայ. հրատարակվել է «Բոտոստրոյ» (1951) վիպակը:

ՍՎԱՐԱՆՑԻ ԵՐԿԱԹԻ ՀԱՆՔԱՎԱՅՐ, ՀՀ Սյունիքի մարզում՝ Արամազդ լ–ան լանջին: Երկաթի հանքանյութի կանխատեսված պաշարներով (մոտ 800 մլն *տ*, հետախուզվածը՝ 137,7 մլն *տ*) ամենախոշորն է Կովկասում: Հանքանյութը բնական

հումք է լեգիրված վանադիում. պողպատ ստանալու համար:

ՍՎԵԴԲԵՐԳ (Svedberg) Թեոդոր (1884–1971), շվեդ ֆիզքիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1966): Փորձով հաստատել է (1906) Ա. Էյնշտեյնի և Մ. Սմոլուխովսկու բրոունյան շարժման տեսությունը: Ստեղծել է (1919) գերցենտրիֆուգման եղանակը և այն կիրառել (1925) սպիտակուցների մոլ. զանգվածի որոշման համար: Նոբելյան մրց. (1926):

ՍՎԵԴԻԱՅԻ ԲԱԼԲԱՆ, հայ-ի «կը» ճյուղի բարբառ: Խոսվել է Անտիոքի շրջանում (Սիրիա): Ունի եռաստիճան բաղաձայն. համակարգ՝ տեղաշարժ-տեղափոխությամբ:

ՍՎԵՅՆՀԵՅՄ (Sweynheim) Կոնրադ (ծ. թ. անհտ–1477), իտալ. տպագրության հիմնադիրը, առաջին տպագրիչը: Մոտ 1465-ին սկսել է գրքեր տպագրել Հռոմի մերձակա Սուբիակո վանքի տպարանում, 1467–77-ին՝ Հռոմում:

ՍՎԵՆՍԵՆ (Svendsen) Յուհան Սևերին (1840–1911), նորվեգ կոմպոզիտոր, ջութակահար, դիրիժոր: 1872–83-ին (ընդմիջումով)՝ Օսլոյի համերգ. ընկերակցության ղեկ-ը (մինչև 1874-ը՝ Է. *Գրիգի* հետ) և սիմֆ. համերգների դիրիժոր: Հեղինակ է սիմֆոնիաների (1867, 1874), ռապսոդիաների, «Նորվեգական արտիստների կառնավալ» (1874) նվագախմբային կոնցերտի և այլ գործերի:

ՍՎԵՆՏՈՍԼԱՎՍԿԻ (Sventoslavski) Վոյցեխ Ալոիզիյ (1881–1968), լեհ ֆիզքիմիկոս: Ձերմաքիմիայի նոր դպրոցի հիմնադիրը: 1940–46-ին՝ ԱՄՆ-ում: Մշակել է կալորիաչափության ճշգրիտ եղանակներ, առաջարկել է բենզոյական թթուն որպես չափանմուշ կալորիաչափ. համակարգի հաստատունի որոշման համար: Առաջարկել է ածուխների կոքսացման և քարածխային խեժի մշակման տեսությունը:

ՍՎԵՇՆԻԿՈՎ Ալեքսանդր Վասիլևիչ (1890–1980), ռուս. խմբավար: ԽՍՀՄ ժող. արտիստ (1956): Սոց. աշխ. հերոս (1970): Համամիութ. ռադիոյի երգչախմբի (հիմն.՝ 1928, 1936–37-ին՝ Ռուս. պետ. ակադեմ. երգչախումբ, 1937–41-ին՝ Լենինգրադի կապելլա), Մոսկվայի խմբերգ. ընկ-յան հիմնադիր-գեղ. ղեկ.: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946):

ՍՎԵՏԼԱՆՈՎ Եվգենի Ֆեոդորովիչ (1928–2002), ռուս. դիրիժոր, կոմպոզիտոր, դաշնակահար: ԽՍՀՄ (1968), Ղրղզ. ԽՍՀ (1974) ժող. արտիստ: Սոց. աշխ. հերոս (1986): 1963-ից՝ Մոսկվայի Մեծ թատրոնի գլխ. դիրիժոր, 1965-ից՝ ԽՍՀՄ պետ. սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ և գլխ. դիրիժոր: Լենինյան (1972), ԽՍՀՄ Պետ. (1983), ՌԴ նախագահի (1998) մրց-ներ:

ՍՎԵՏԼՈՎ (Շեյնկման) Միխայիլ Արկադևիչ (1903–1964), հրեա ռուսագիր բանաստեղծ, դրամատուրգ: Հեղինակ է «Արմատներ» (1925), «Գրենադա» (1926), «Գիշերային հանդիպումներ» (1927), «Հորիզոն» (1959), «Որսորդական տնակ» (1964) ժող-ների, «Հեքիաթ» (1939), «Քսան տարի անց» (1940), «Ցանկության հրվանդանը» (1940), «Բրանդենբուրգյան դարպաս» (1946), «Ուրիշի երջանկությունը» (1953), «Մեր առ երեք նարինջները» (1963, Կ. Գոցցիի հեքիաթի մոտիվներով) քնարականությամբ և ռոմանտիկայով հատկանշ. պիեսների: Հայ. հրատարակվել է «Քսան և ութը» (1944) բանաստեղծությունների ժող-ը:

ՍՎԵՏԼՈՎԻԴՈՎ (Սեղիխ) Նիկոլայ Աֆանասևիչ (1889–1970), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1965): 1933-ից՝ Մոսկվայի Փոքր թատրոնի դերասան (Մուրզավեցկի, Լինյան՝ Ա. Ն. Օստրովսկու «Գայլեր և ոչխարներ», Ռեպետիլով, Ֆամուսով՝ Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս», ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1942, 1949):

ՍՎԵՏՈՆԻՈՍ Գայոս Տրանքվիլլոս (Gaius Suetonius Tranquillus, մոտ 70–մոտ 140), հռոմեացի պատմագիր և գրող: Գլխ. աշխ-ում («Տասներկու կեսարների կյանքը», 8 գիրք) ներկայացրել է պատմ. իրադարձություններն ու կայսրերի սովորությունները՝ Հուլիոս Կեսարից մինչև Դոմիտիանոս: Օգոստոսի, Տիբերիոսի, Կալիգուլայի, Ներոնի կենսագրություններում տեղեկություններ կան նաև Հայաստանի մ. թ. I դ-ի 1-ին կեսի պատմության վերաբերյալ:

ՍՎԵՐԴԼԻՆ Լև Նաումովիչ (1901–1969), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1954): 1926-ից՝ Մոսկվայի Վ. Մեյերհոլդի անվ., 1937–41-ին՝ Ե. Վախթանգովի անվ., 1943-ից՝ Վ. Մայակովսկու անվ. թատրոնների դերասան (Հուգո Նունբախ՝ Յ. Պ. Հերմանի «Մուտք», Սչաստլիվցև՝ Ա. Ն. Օստրովսկու «Անտառ», Պոլոնիոս՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», ևն): Նկարահանվել է կինոյում («Նրա անունը Սուխո-Բատոր է», «Սպասիր ինձ», «Մոսկվայից հեռու», «Երկու կյանք» ևն):

ԽՍՀՄ Պետ. մրց. (1947, 1949, 1951):

ՍՎԵՐԴԼՈՎ Եվգենի Դավիդովիչ (ծ. 1938), ռուս. կենսաքիմիկոս: ՌԳԱ ակադ. (1997): Գենային ճարտարագիտ-յան մեթոդով ստեղծել է (աշխատակիցների հետ) բակտերիային շտամներ, ինտերֆերոն և կենսաբանորեն ակտիվ այլ միացություններ: ԽՍՀՄ Պետ. (1982), Լենինյան (1985) մրց-ներ:

ՍՎԵՐԴԼՈՎ Յակով Միխայլովիչ (1885–1919), խորհրդ. կուս. և պետ. գործիչ: Ուրալում մասնակցել է 1905–07-ի հեղյանքը: 1912-ին կոոպտացվել է ՌՍԴ(բ)Կ ԿԿ, Ռուս. բյուրոյի ԿԿ անդամ: 1917-ի օգոստ-ից գլխավորել է ՌՍԴ(բ)Կ ԿԿ-ի քարտուղարությունը: 1917-ի աշնանը՝ Պետրոգրադում զինվ. ապստամբության ղեկավարման կուս. կենտրոնի անդամ, ՌՀԿ անդամ: Նոյեմբ. 8 (21)-ից՝ Համառուս. ԿԳԿ նախագահ: 1918-ին գլխավորել է Պետրոգրադի հեղ. պաշտպ-յան կոմիտեն: ՌԽՖՍՀ Սահմանադրությունը կազմող հանձնաժողովի նախագահ (1918-ի ապրիլից):

ՍՎԵՐԴԼՈՎՍԿԻ ՄԱՐԶ, ՌԴ Ուրալի դաշն. օկրուգում: Տարածքը՝ 194,3 հզ. *կմ*^{2}, բն.՝ 4393,6 հզ. (2009): Ունի 34 շրջան, 47 քաղաք, 27 քտա: Վարչ. կենտրոնը՝ Եկատերինբուրգ: Կազմավորվել է 1934-ին՝ Միջին և Հս. Ուրալի (բարձր.՝ 1569 *մ*) սահմաններում, և հվ-ից՝ Արևմտասիբիր. հարթավայրի ծայրամասում: Խոշոր գետերն են Տավդան, Տուրան և Ուֆան: Անվանվել է Յ. Մ. *Սվերդլովի* անունով:

ՍՎԵՐԴՐՈՒՊ (Sverdrup) Հարալդ Ուլրիկ (1888–1957), նորվեգացի բևեռախույզ, օդերևութաբան, օվկիանոսագետ: 1918–1925-ին «Մոդ» նավում մասնակցել է Ռ. *Ամունդսենի* արշավախմբի աշխ-ներին՝ Արևմտասիբիր. ծովի ջրերի դինամիկայի, ռեժիմի հետազոտությունների համար: 1931-ին ղեկավարել է «Նաուտիլուս» սուզանավով գիտ. հետազոտությունները՝ ձգտելով հասնել Հս. բևեռ:

ՍՎԵՐԴՐՈՒՊ Օտտո (1854–1930), նորվեգացի բևեռախույզ: Ֆ. *Նանսենի* արշավախմբի մասնակից (Գրենլանդիայում 1888-ին, «Ֆրամի» կապիտան՝ 1893–96-ին): 1898–1902-ին «Ֆրամ»-ով հետազոտել է Կանադայի արկտիկ. կղզեխմբի հս. մասը, Էլսմիր կղզին և հայտնաբերել է մի շարք կղզիներ: Մասնակցել է Գ. Յ. Սեդովի, Վ. Ա. Ռուսանովի և Գ. Լ. Բրուսիլովի արշավախմբի (1914–15) որոնումներին:

ՍՎԻՆ, խոցող և կտրող սառը զենք, ամրացվում է հրացանի, ինքնաձիգի փողին՝ ձեռնամարտի համար: Ի հայտ է եկել XVII դ-ի կեսերին: Տարբերում են երեսակված, շեղբավոր, հանովի և չհանվող U-ներ և U-դաշույններ:

ՍՎԻՆՀՈՒՎՈՒԴ (Svinhufud) Պեր Էվինդ (1861–1944), Ֆինլանդիայի 1-ին վարչապետը՝ 1917-ի նոյեմբ–1918-ի մայիսին, 1918-ի մայիս–դեկտ-ին՝ պետության ղեկ-ի պարտականություններ կատարող (ռեգենտ): 1930–31-ին՝ վարչապետ, 1931–37-ին՝ նախագահ:

ՍՎԻՐՉՅՈՎ Գեորգի Պետրովիչ (1912–1999), ռուս. մեխանիկոս: ՌԳԱ ակադ. (1976): Սոց. աշխ. հերոս (1957, 1982): Աշխ-ները վերաբերում են ինքնաթիռների աերոդինամիկային և ավիաշարժիչներին:

ԽՍՀՄ Պետ. (1946, 1952, 1968), Լենինյան (1976) մրց-ներ:

ՍՎԻՐԻԴՈՎ Գեորգի (Յուրի) Վասիլևիչ (1915–1998), ռուս. կոմպոզիտոր, դաշնակահար: ԽՍՀՄ ժող. արտիստ (1970): Սոց. աշխ. հերոս (1975): Հեղինակ է երաժշտ. կատակերգությունների («Կրակներ», 1951, ևն), Ա. Խաչատրյանի («Հայրենի երկիրը», 1950), Ս. Եսենինի («Պոեմ Ս. Եսենինի հիշատակին», 1956, ևն), Վ. Վ. Մայակովսկու («Պաթետիկ օրատորիա», 1959) խոսքերով գրված կամեր-վոկալ և վոկալ-սիմֆ. գործերի, «Կուրսկի երգեր»-ի (1964), կանտատնեբի («Գարնանային կանտատ», 1972, ևն), ջութակի, թավջութակի և դաշնամուրի համար տրիոյի (1945), թատրոնի և կինոյի երաժշտության: Լենինյան (1960),

ԽՍՀՄ (1946, 1968, 1980), ՌԴ (1994) Պետ. մրց-ներ:

ՍՎԻՐՄԿԻ Ալեքսեյ Իվանովիչ (1865–1942), ռուս. գրող: Հեղինակ է «Ջոհված մարդիկ» (հ. 1–3, 1898) պատմվածքների և ակնարկների ժող-ների, «Շեկլիկը» (1901, հայ.՝ 1949) վիպակի, «Հրեական պատմվածքներ» (1909) ժող-ի, «Իմ կյանքի պատմությունը» (հրտ.՝ 1947) ինքնակենսագր. երկի:

ՍՎԻՖԹ (Swift) Ջոնաթան (1667–1745), անգլիացի գրող, քաղ. գործիչ: Հեղինակ է «Ջրույց տակառի մասին» (1704) այլաբան., «Անգլիացի եկեղեցականի նկատառումները» (1708), «Դատողություններ քրիստոնեության արգելման մասին» (1709), «Սահուդագործի նամակները» (1723–24), «Համեստ առաջարկ» (1729) պամֆլետների: «Գուլիվերի ճանապարհորդությունը» (1726, հայ.՝ 1897, «Լեմյուել Գուլիվերի ճանապարհորդությունները դեպի աշխարհի այլ և այլ երկրներ», 1958) վեպում Ս. այլաբանության, գրոտեսկի միջոցով ծաղրել է ժամանակի Անգլիայի քաղ., իրավ., կրոն., տնտ., գիտ. հաստատությունների գործունեությունը, բոլոր խավերին՝ արքայից մինչև հպատակ, կենցաղ., մշակութ., պալատ. կյանքը:

ՍՎԻՖԹ (անգլ.՝ swift – շտապ, արագ), համակարգիչների ցանցի միջոցով միջազգ. վճարումների կատարման ֆին. ավտոմատ համակարգ: Ստեղծվել է 1973-ին Բրյուսելում:

ՍՎՅԱՏՈԳՈՐՍԿԻ ՄԱՅՐԱՎԱՆՔ, Սուրբ Ուսպենսկի Սվյատոգորսկի մայրավանք, ուղղափառ մենաստան Սվյատոգորսկում (Դոնեցկի մարզ, Ուկրաինա): Հիշատակվում է 1526-ից: Փակվել է 1787-ին, վերականգնվել է 1844-ին: 2004-ից մայրավանք է. ընդգրկում է Ուսպենսկի տաճարը (1859–68), Սբ Անտոնիի և Սբ Թեդոսի Պեչերսկիների (1846), Սբ Աստվածածին (1850), Սբ Նիկողայոս Սքանչելագործի (1851) եկեղեցիները:

ՍՎՈԲՈԴԱ (Svoboda) Լյուդվիկ (1895–1979), Չեխոսլովակիայի նախագահ՝ 1968–75-ին, բանակի գեն. (1945): 1942–43-ին՝ ԽՍՀՄ-ում ստեղծել է չեխոսլովակ. զորամիավորում, գլխավորել է 1-ին Չեխոսլովակ. առանձին գումարտակը, Սոկոլովո գ-ի մոտ մասնակցել ճակատամարտին: 1944-ից՝ Չեխոսլովակ. 1-ին բանակ. կորպուսի հրամ.: 1945–50-ին՝ ազգ. պաշտպ-յան նախարար: 1968-ի օգոստ-ից՝ Չեխոսլովակիայի կոմկուսի ԿԿ-ի և ԿԿ-ի նախագահության անդամ:

Լենինյան միջազգ. մրց. (1970):

«ՍՏԱԲԱՏ ՄԱՏԵՐ» (լատ.՝ «Stabat mater dolorosa» – «Կանգնած էր տիրամայրը սգավոր» տեքստի առաջին բառերը), միջնադար. կաթոլիկ եկեղեցում սեկվենցիա, օրհներգ: Տարածվել է XV դ-ում: Ճանաչված են Ժոսքեն Դեպրեի, Ջ. Պալեստրինայի, Օ. Լասսոյի բազմաձայն «Ս. մ.»-ները, նաև Ջ. Պերգոլեզիի, Յ. Հայդնի, Ֆ. Շուբերտի, Ջ. Ռոսսինիի, Ք. Պենդերեցկու և ուր. «Ս. մ.»-ների տեքստով գրված գործերը:

ՍՏԱԶ (հուն.՝ stasis – անշարժություն), **կանգ**, խողովակավոր օրգանների (մզանոթներ, երակներ, ավշանոթներ ևն) ֆիզիոլոգ. պարունակության շարժման դադար. օր.՝ արյան կանգ (հեմոստազ), ավշի կանգ (լիմֆոստազ) ևն: Առաջանում է քիմ. և ֆիզ. գործոնների, բակտերիային թույների ազդեցության, անոթների նյարդավորման խանգարումների և այլ դեպքերում:

ՍՏԱԺ Ա.ՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ, աշխ. գործունեության տևողությունը: Տարբերում են՝ ընդհ. (աշխ. և հասարակականորեն օգտ. այլ գործունեության տևողության հանրագումարը) և հատուկ (որոշակի պաշտոններում, աշխ. գործունեության տեսակներում կամ որոշակի պայմաններում աշխ-ի տևողության հանրագումարը) աշխ. ստաժ՝ներ:

ՍՏԱԼԱԳՄԻՏՆԵՐ, **պտկաքարեր**, հոսանստվածք. (հաճախ՝ կրաքար.) սյունաձև, կոնաձև գոյացումներ, որոնք առաջանում են քարայրերի հատակին՝ բարձրից կաթող կալցիումի կարբոնատով հագեցած ջր. կաթիլներից գազերի հեռացման և դրանց գոլորշիացման հետևանքով նստող աղերից:

ՍՏԱԼԻՆ (Ջուղաշվիլի) Իոսիֆ Վիսարիոնովիչ (կեղծանունը՝ Կոբա ևն) [1878 (ճշգրտված տվյալով)–1953], Ռուսաստանի քաղ., խորհրդ. կուս. և պետ. գործիչ: Ազգությամբ՝ վրացի: Սոց. աշխ. հերոս (1939), ԽՄ հերոս (1945), ԽՄ մարշալ (1943), ԽՄ գեներալիսիմուս (1945): 1903-ին միացել է ***բոլշևիկներին***: 1907-ին՝ ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի կազմակերպիչներից ու ղեկ-ներից: Վ. Ի. Լենինի կողմնակիցներից էր, որի նախաձեռնությամբ 1912-ին կոոպտացվել է ԿԿ կազմ և 1917-ին ներառվել ՌՍԴԲԿ ԿԿ Ռուս. բյուրո: 1917–23-ին՝ ՌԽՖՍՀ ազգությունների գործերի ժողկոմ, միաժամանակ, 1919–22-ին՝ Պետ. վերահսկողության ժողկոմ, 1918-ից՝ մի շարք ռազմաճակատների ՌՀԽ անդամ: 1922-ից՝ ՌԿ(բ)Կ [ՀամԿ (բ)Կ, ԽՄԿԿ] գլխ. քարտուղար, 1934-ից՝ քարտուղար: 1920-ական թթ-ի վերջին դարձել է կուս-յան առաջնորդ և հաստատել է բռնապետություն: Հռչակել է «մեկ առանձին վերցրած երկրում սոցիալիզմի կառուցման կուրս»: Իրագործել է երկրի արագացրած ինդուստրացում և գյուղաց. տնտ-յունների բռնի կոլեկտիվացում: Իրականացրել է զանգվածային բռնաճնշումների քաղ-յուն, վնասել խորհրդ. հաս-յան բոլոր խավերին, ստեղծել է վախի մթն.: 1941–53-ին՝ ԽՍՀՄ ԺԿԽ (ՆԽ) նախագահ: ՀՄՊ-ի տարիներին՝ ՊՊԿ նախագահ, պաշտպ-յան ժողկոմ, գերագույն գլխ. հրամ.: 1941–47-ին՝ պաշտպ-յան ժողկոմ, ԽՍՀՄ ԶՈՒ նախարար: Նախաձեռնել է (ԱՄՆ-ի նախագահ Ֆ. Դ. ***Ռուզվելտի*** և Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. ***Չերչիլի*** հետ) հակահիտլերյան կոալիցիայի ստեղծումը: Պատերազմի ավարտից հետո, որի ընթացքում խորհրդ. զորքերն ազատագրել են Արլ. և Կենտր. Եվրոպայի մեծ մասը, Ս. դարձել է համաշխ. սոց. համակարգի գաղափար. և գործն. առաջնորդը: Խորհրդ. «ատոմային նախագծի» իրականացման գլխ. նախաձեռնողներից է, որն օժանդակել է ԽՍՀՄ-ի վերածմանը գերտերության (ԱՄՆ-ին հավասար): ԽՄԿԿ XX և XXII համագումարներում Ս-ի գործունեությունը ենթարկվել է սուր քննադատության: Ս-ի ճնշմամբ ՌԿ (բ)Կ Կովբյուրոյի 1921-ի հուլիսի 5-ի արտահերթ նիստը որոշել է ԼՂ մտցնել Ադրբ. ԽՍՀ կազմի մեջ, նույն թ-ի հուլիսի 7-ի նիստը՝ հայկ. ու հայաբնակ Ախալքալաքի ու Ծալկայի (Խրամ) պատկանելիության հարցը թողել է Վրաստանի ԿԿ ԿԿ հայեցողությանը:

ՍՏԱԼԻՆԳՐԱԴ, ***Վոլգոգրադի*** անվանումը 1925–61-ին:

ՍՏԱԼԻՆԳՐԱԴԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1942–1943, խորհրդ. զորքերի պաշտպ. (1942-ի հուլիսի 17–նոյեմբ. 18) և հարձակող. (1942-ի նոյեմբ. 19–1943-ի փետր. 2) գործողությունները ՀՄՊ-ի ժամանակ, Ստալինգրադի պաշտպ-յան և Դոն ու Վոլգա գետերի միջև ԵՀՊ-ի խոշորագույն ճակատամարտերից էր (տևել է 200 օր), որի ընթացքում գերմանացիները կորցրել են 1,5 մլն զինվոր ու սպա, գերմ. 6-րդ բանակի հրամ., ֆլդմ. Ֆ. ***Պաուլյուսը*** գերի է ընկել: Ս. ճ-ի հաղթական ավարտը ռազմաքաղ. բեկումնային մեծ նշանակություն է ունեցել ինչպես ՀՄՊ-ի, այնպես էլ ԵՀՊ-ի ընթացքի վրա: Ս. ճ-ի ավարտին սպասող և խորհրդա-թուրք. սահմանին շուրջ 1 մլն զորք կենտրոնացրած Թուրքիան այլևս չի համարձակվել մարտ. գործողություններ սկսել ԽՍՀՄ-ի դեմ, որոնք սկսվելու էին Հայաստանի վրա հարձակումով:

Ս. ճ-ին մասնակցել են Հայաստանից ռազմաճակատ մեկնած 76-րդ (Կ. Ե. Վորոշիլովի անվ.), 136-րդ և 138-րդ հրաձգ. դիվիզիաները, որոնց անձակազմերի մեջ զգալի թիվ են կազմել հայերը: 76-րդ հրաձգ. դիվիզիան կարևոր դեր է խաղացել պաշտպ. և հարձակող. մարտերում. վերանվանվել է 51-րդի, արժանացել գվարդ. կոչման (1943-ին՝ Լենինի շքանշան): 136-րդ (մինչ այդ գվարդ. կոչման արժանացած 15-րդ հրաձգ.) դիվիզիան 57-րդ բանակի զորամասերի հետ թշնամու առջև փակել է Ստալինգրադի հվ. մատույցները: Անօրինակ սխրանքներ է գործել 138-րդ հրաձգ. դիվիզիայի (վերանվանվել է 70-րդ գվարդ.) անձնակազմը: Ս. ճ-ում մարտնչող բոլոր զորամասերում եղել են մեծ թվով հայեր: Դոնի ռազմաճակատի քաղվարչության պետն էր գեն-լեյտ. Սերգեյ ***Գալաջևը***: 5-րդ տանկ. բանակի ռազմ. խորհրդի անդամներից էր գեն-լեյտ. Հայկ ***Թումանյանը***: Նոյեմբ. հակահարձակման ժամանակ հրետան. հարձակման նախապատրաստությունը ղեկավարել է գեն-մայոր Իվան ***Վևքիյանը***: Թշնամու դեմ հաղթ. մարտեր են մղել բրիգադի հրամ. Ա. Կարապետյանը, գնդերի հրամ-ներ Կ. Մաղաթյանը, Ա. Բարսեղյանը, Գ. Միրզոյանը: Օդաչու Սերգեյ ***Բուռնագյանը*** խփել է թշնամու 14 ինքնաթիռ: Հերոսի մահով զոհվել է օդաչու, ավագ լեյտ. Վլադիմիր ***Միկոյանը***: Քաղաքի պաշտպ-յան կոմիտեի անդամ էր «Կրասնի օկտյաբր» գործարանի տնօրենն Պ. Մաթևոսյանը:

ՍՏԱԼՈՆԵ (Stallone) Սիլվեստր (ծ. 1946), ամերիկացի կինոդերասան, ռեժ., սցենարիստ: Համաշխ. ճանաչման է արժանացել մարտ-մելոդրամային «Ռոքի» (1976–90, 1-ին սերիայում՝ դերասան և սցենարիստ, 2–5-րդ-ում՝ նաև ռեժ.) և «Ռեմբո» (3 ֆիլմ, 1982–88) կինոնկարներով: Նկարահանվել է նաև «F.I.S.T.», «Կոբրա», «Տանգոն և Քեշը», «Բանտում», «Կանգնի՛ր, կամ մայրիկը կկրակի», «Լեռնագնացը», «Անզսպելիները», «Կրիդ: Ռոկկի ժառանգորդները» և այլ ֆիլմերում: Նկարահանել է երաժշտ. կինոնկարներ («Ողջ մնալ», 1983, ևն):

ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ, ԽՍՀՄ-ում արտադր-յան նորարարների (առաջավոր բանվորներ, կոլտնտեսականներ, ինժեներատեխ. աշխատողներ) շարժում: Սկսվել է 1935-ի՝ որպես սոցմրցության նոր փուլ՝ Դոնբասի ածխի հանքահորերում, ապա տարածվել այլ ճյուղերում, տրանսպորտում ևն: Սկզբնավորել է բանվոր Ա. Գ. Ստախանովը (1906–1977):

ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ Լենա (Ելենա, 1926–2011), ֆթիզիատր: Բժշկ. գիտ. դ-ր (1973), պրոֆ. (1979): Ռաֆայել և Վահագն ***Ստամբոլցյանների*** քույրը: Աշխ-ները վերաբերում են տուբերկուլոզի հակահամաճարակաբանության, կլինիկայի, բուժման հարցերին: ՀՀ ԱՆ գլխ. ֆթիզիատր (1972–80), մանկ. տուբերկուլոզի գլխ. մասնագետ (1985–2000):

ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ Միքայել Գուրգենի (ծ. 1938), կինոգետ, սցենարիստ: Կազմել և խմբագրել է մի շարք գրքեր («Հայկական կինո, 1924–99», լիակատար կատալոգ, ևն): Հեղինակ է կինոսցենարների («Վերջին կայարան», 1994, գեղ. ֆիլմ, համահեղ., «Մեր հացը», 1985, «Վավերագրողը», 2003, «Պոետի վերադարձը», 2005, համահեղ., երեքն էլ՝ վավերագր. ֆիլմ): 2004-ից՝ «Ոսկե ծիրան» միջազգ. կփ-ի ծրագրերի տնօրեն:

ՀՀ Պետ. (2003), նախագահի (2010), «Հայակ» (2012) մրց-ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2012):

ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ Ռաֆայել Պարույրի (1922–2012), թերապևտ-սրտաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1969), պրոֆ. (1964): ՀՀ ԳԱԱ ակադ. (1994, թղթ. անդամ՝ 1973-ից): Լենա և Վահագն ***Ստամբոլցյանների*** եղբայրը: Ս. առաջինն է ՀԽՍՀ-ում օգտագործել բուժ. քունը. ստեղծել է էլեկտրաքնի ինքնատիպ սարք: Ներդրել է էլեկտրասրտագրությունը: Ս-ի

առաջարկած դինամիկ էլեկտրասրտագրության մեթոդով հաջողվել է որոշել սրտամկանի ինֆարկտի ընթացքի առանձնահատկությունները և ժամանակին կարգավորել բուժ. միջոցառումները: 1968-ին թերապիայի ամբիոնին կից կազմակերպել է ԳՀԼ, որտեղ ստեղծվել են սրտի գործունեությանը հետևող սարքեր ու համակարգեր:

ՀԽՍՀ ԳԱ «Փորձարարական և կլինիկական բժշկության» հանդեսի գլխ. խմբ. (1988–94), ԽՍՀՄ թերապևտների ու սրտաբանների գիտ. ընկ-ների վարչությունների անդամ (1982–92): ՀԽՍՀ Պետ. մրց. (1980):

ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ Վահագն Պարույրի (1931–2011), երգեհոնահար, մանկավարժ: ՀՀ ժող. արտիստ (2006): Պրոֆ. (1990): Ռաֆայել և Լենա *Սրամբոլցյանների* եղբայրը: Նվագացանկում՝ մինչդաս. շրջանի, Յ. Ս. Բախի, Գ. Ֆ. Հենդելի, Ք. Քուշնարյանի, Հ. Ստեփանյանի, Տ. Մանսուրյանի երկերից: Առաջինն է երգեհոնով կատարել Ներսես Շնորհալու, Խաչատուր Տարոնացու, Գրիգոր Մագիստրոս Պահլավունու շարականները (Կոմիտասի ու Մ. Եկմալյանի մշակմամբ և իր փոխադրությամբ): ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշան (2009):

ՍՏԱՄԲՈՒԼ, **Իսթանպուլ** (Istanbul), Թուրքիայի խոշորագույն քաղաքն ու համանուն վիլայեթի վարչ. կենտրոնը Կոնստանդնուպոլիս: Բն.՝ 12,18 մլն, ագլոմերացիայում՝ 14,35 մլն (2012): Միջազգ. տրանսպորտ. հանգույց է, ունի 2 օդանավակայան, Բոսֆորի նեղուցի վրա անցկացված կամուրջները կապում են քաղաքի եվրոպ. և ասիական մասերը: Երկրի գլխ. արդ. (համախառն արտադրանքի շուրջ 40 %-ը), ֆին., առևտր. և մշակութ. կենտրոնն է: Կան մեքենաշին. և մետաղամշակման, քիմ., դեղագործ., սննդի, թեթև արդ-յան և այլ ձեռն-ներ: Գործում են բազմաթիվ թանգարաններ (Հնագիտ., Թուրք. և մահմեդ. արվ-ի, գեղանկարչության և քանդ-յան ևն), թատրոններ և բուհեր: Հիմնադրվել է մ. թ. ա. 660-ին՝ որպես Բյուզանդիա: Մ. թ. 324-ին *Կոստանդին I* կայսեր անունով կոչվել է *Կոստանդնուպոլիս*: 1453-ին նվաճել են թուրքերը և կոչել նաև Ս. (պաշտոն.՝ 1930-ից): 1453–1918-ին եղել է Օսմ. կայսրության, մինչև 1923-ը՝ Թուրքիայի մայրաքաղաքը:

Պահպանվել են բյուզ. ժամանակների պարիսպների, կայսեր. պալատների, ձիարշավարանի մնացորդներ, ստորգետնյա ջրապահեստներ և պաշտամունք. շենքեր, որոնց մեծ մասը թուրքերը վերածել են մզկիթների (օր.՝ Սբ Սոֆիայի տաճարը): Թուրք. միջնադար. կառույցներից են Անադոլուհիսարի (XIV դ-ի վերջ), Ռումելիհիսարի (1452), Եդիկուլե (1455) բերդերը, Բայազիդի (1497–1503/1505), Շահզադե (1548, ճարտ.՝ Սինան), Սուլեյմանիե (1550–57, ճարտ.՝ Սինան), Ենի Ջամի (1597–1663), Ահմեդիե (1609–17) և այլ մզկիթներ: Պատմամշակութ. շատ հուշարձաններ Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում են:

Ներկայում Ս-ում բնակվում է շուրջ 70 հզ. հայ: Գործում է 35 եկեղեցի (մինչև 1915-ը՝ 47), որոնց շուրջ ստեղծվել են թաղ. խորհուրդներ, հոգաբարձություններ, խնամակալություններ, վարժարաններ: Հրատարակվում են *«Ժամանակ», «Մարմարա»* օրաթերթերը, *«Ակօս»* շաբաթաթերթը, պատրիարքարանի «Լրաբեր» տեղեկատուն, «Շողակաթ» պատմաբանասիր. հանդեսը, *«Սուրբ Փրկիչ»* ազգ. հիվանդանոցի համանուն ամսագիրը: Գործում է *«Արաս»* հրատարակչատունը:

Շիշլիի հայկ. գերեզմանատանն են թաղված բազմաթիվ հայ մտավորականներ՝ Գարեգին Սրվանձտյանը, Մաղաքիա արք. Օրմանյանը, Գարագաշները, Պալըգլիի գերեզմանատանը՝ Միսաք Մեծարենցը և ուր.:

2007-ի հունվ. 19-ին Ս-ում՝ «Ակօս»-ի խմբագրատան առջև, թուրք ազգայնականներն սպանել են Հրանտ *Դինքին*:

ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, հիմնադրվել է 1453-ին: Մինչև XX դ-ի սկիզբը՝ Բարձրագույն մուսուլման. դպրոց: Վերակազմավորվել է 1927 և 1933-ին: 2015-ին ուներ ավելի քան 60 հզ. ուսանող:

ՍՏԱՄՈ Եվգենի Նիկոլաևիչ (1912–1987), ռուս. ճարտ.: ԽՍՀՄ ժող. ճարտ. (1984): Համահեղինակ է Կրեմլի համագումարների պալատի (1959–61), Մոսֆիլմյան փողոցի բնակելի տների (1970-ական թթ.), Սամվելյան բնակելի թաղամասի (1966-ից), Կինեմատոգրաֆիստների կենտր. տան (1967), Օլիմպ. գյուղի (1980, բոլորը՝ Մոսկվայում) նախագծերի: Լենինյան (1962), ԽՍՀՄ Պետ. (1981) մրց-ներ:

ՍՏԱՄՈՔ (հուն.՝ gaster), մարդու և կենդանիների մարսող. խողովակի լայնացած հատվածը, որը հաջորդում է կերակրափողին: Կատարում է սննդի կուտակման, մեխ. ու քիմ. մշակման և դեպի աղիներ տեղափոխման գործառույթներ: Ս-ի գեղձերն արտադրում են ստամոքսահյութ: Հաճախակի հիվանդություններից են Ս-ի բորբոքումը և խոց. հիվանդությունը:

ՍՏԱՄՈՔՍԱԲՈՐԲ, **գաստրիտ**, ստամոքսի լորձաթաղանթի բորբոք. հիվանդություն: Կարող է լինել սուր (ցավեր սրտագդալի տակ, սրտխառնոց, փսխումներ) և քրոնիկ. (սրտագդալի շրջանում ծանրության, ճնշման զգացողություններ, այրոց, գխտոց, բերանում տհաճ համ), որոնք առաջանում են ուտելուց 2–3 *ժ* հետո:

ՍՏԱՄՈՔՍԱԴԻՏՈՒՄ, **գաստրոսկոպիա**, հետազոտման մեթոդ. ստամոքսի խոռոչի զննումը ստամոքսադիտակով (գաստրոսկոպ), որը օպտիկ. և լուսավորող համակարգերով խողովակ է:

ՍՏԱՄՈՔՍԱԼՔ, **պիլորուս** (pilorus – դրունք), ստամոքսի՝ 12-մատնյա աղիի անցման տեղը, որտեղ կան գեղձեր (**պիլորուսային գեղձեր**), որոնց արտազատուկն ունի հիմնային ռեակցիա և պարունակում է լորձ:

ՍՏԱՄՈՔՍԱԼՔԻ ԿԾԿԱՆՔ, **պիլորոսպազմ**, առավելապես հանդիպում է կրծքի երեխաների մոտ՝ կապված վեգետատիվ նյարդ. համակարգի ֆունկցիայի խանգարման հետ: Դրսևորվում է պարբեր. փսխումներով:

ՍՏԱՄՈՔՍԱՀՅՈՒԹ, մարսող. հյութ. արտադրվում է ստամոքսի լորձաթաղանթում: Անգույն հեղուկ է՝ թթվային ռեակցիայով: Պարունակում է ֆերմենտներ, որոնք իրականացնում են սննդանյութերի ճեղքման նախնական փուլը, նաև աղաթթու, լորձ և, այսպես կոչված, ներքին գործոն («Կասլի գործոն»), որը նպաստում է B_{12} վիտամինի ներծծմանը: Մարդու օրգանիզմում օրական արտադրվում է մինչև 2 *լ* Ս.: Կենդանիների Ս. օգտագործվում է որպես բուժիչ միջոց:

ՍՏԱՄՈՔՍԱԼԻՔՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **գաստրոէնտերոլոգիա**, բժշկագիտ-յան բաժին. ուսումնասիրում է մարսողության օրգանների կառուցվածքը և ֆունկցիաները, այդ օրգանների հիվանդությունների առաջացման մեխանիզմները, մշակում ախտորոշման, բուժման և կանխարգելման մեթոդներ:

ՍՏԱՄՈՔԻ ԻԶՎԱԾՔ, **գաստրոպտոզ**, ստամոքսի բնածին (մարմնակազմվածք.) կամ ձեռքբերովի (օր.՝ խիստ նիհարելու, կրկնվող հղիությունների դեպքերում): Դրսևորվում է սրտագդալի տակ ծանրության զգացումով, գխտոցներով, որովայնի փքվածությամբ:

«ՍՏԱՄՊԱ» (“La Stampa” – «Մամուլ»), իտալ. ամենահին և հեղինակավոր օրաթերթերից, պահպանող. ուղղվածության (1867-ից, Տուրին):

ՍՏԱՆԻՆ (լատ.՝ stannum – անագ), անագ. հրաքար, միներալ՝ սուլֆիդների դասից՝ $Cu_2Fe\ SnS_4$: Պարունակում է Cu, Fe, Sn, ինչպես նաև խառնուրդներ: Պողպատամոխրագույն է: Կարծր.՝ 3–4,5, խտ.՝ 4300–4500 *կգ/մ*^{3}: Անագի հանքանյութ է:

ՍՏԱՆԻՇԵՎ Սերգեյ Դմիտրևիչ (ծ. 1966), Բուլղարիայի վարչապետ՝ 2005–09-ին, Բուլղարիայի սոց. կուս-յան նախագահ: Մինչև 1995-ը՝ Ռուսաստանի քաղաքացի:

ՍՏԱՆԻՍԼԱՎՍԿԻ (Ալեքսեև) Կոնստանտին Սերգեևիչ (1863–1938), ռուս դերասան, ռեժ., մանկավարժ, թատրոնի տեսաբան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1936): Թատերարվ-ի արդի գիտ-յան հիմնադիրը: 1898-ին (Վ. Նեմիրովիչ-Դանչենկոյի հետ) հիմնադրել է ՄԳԹ, 1935-ին՝ օպեր. դրամատիկ. ստուդիա: Ս. ստեղծել է դպրոց, ուղղություն («Ստանիսլավսկու համակարգ»), որը նոր փուլ էր բեմ. ռեալիզմի զարգացման մեջ: Նրա՝ դերասանի ստեղծագործության մասին ուսմունքը կիրառել են ժամանակակից թատեր. ռուս. հաստատություններում: Դերերից են՝ Դոկտոր Շտոկման (Հ. Իբսենի «Ժողովրդի թշնամին»), Ֆամուսով (Ա. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս», ևն), բեմադրություններից՝ Ա. Պ. Չեխովի «Ճայը» (1898), Մ. Գորկու «Հատակում» (1902, երկուսն էլ՝ Նեմիրովիչ-Դանչենկոյի հետ) ևն: Ստեղծագործ. կապեր է ունեցել Եվգենի *Վախթանգովի* հետ, հետևորդներից էր Օվի *Սևումյանը*: Վարդգես *Սուրենյանցի* ձևավորմամբ բեմադրել է Ն. Մետերլինկի 3 փոքրածավալ պիեսները (1904), Սարտիրոս *Սարյանի* մասնակցությամբ՝ Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Ոսկե աքաղաղ» (1932) և Ժ. Բիզեի «Կարմեն» (անավարտ) օպերաները:

ՍՏԱՆԻՍԼԱՎՍԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳ, ռեժ. թատրոնի համար Կ. Ս. *Ստանիսլավսկու* մշակած սկզբունքների (գեղ. մտահղացման միասնականություն, որն ընդգրկում է ներկայացման բոլոր տարրերը՝ դերասան. անսամբլի ամբողջականություն, միզանսցենի հոգեբ. պայմանականություն ևն) պայման. անվանումը: Կարևոր են նաև բանաստեղծ. մթն-ի ստեղծումը բեմում, կերպարների կենս. ճշմարտացիությունը, դերասանի վերապրումի արվ-ը ևն:

ՍՏԱՆԻՑԻՆ (Գյոզե) Վիկտոր Յակովլևիչ (1897–1976), ռուս. դերասան, ռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1948): 1924-ից՝ ՄԳԱԹ դերասան (Կուրոսլեպով՝ Ա. Ն. Օստրովսկու «Ձերմ սիրտ», Նահանգապետ՝ «Մեռած հոգիներ» ըստ Ն. Վ. Գոգոլի, Ստիվ Օր-

լոնակի՝ «Աննա Կարենինա»՝ ըստ Լ. Ն. Տոլստոյի, Անդրեյ՝ Ա. Պ. Չեխովի «Երեք քույր», ևն): Բեմադրել է «Պիկվիկյան ակումբ»՝ ըստ Չ. Դիքենսի (1934), Ֆ. Շիլլերի «Մարի Ստյուարտ» (1957) և այլ գործեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1947, 1949, 1951, 1952):

ՍՏԱՆԿԵՎԻՉ Նիկոլայ Վլադիմիրովիչ (1813–1840), ռուս փիլ. և գրող: Պատմ. առաջընթացի գլխ. ուժը Ս. համարել է լուսավորությունը, ռուս. մտավորականության հիմն. խնդիրը՝ հումանիզմի գաղափարների տարածումը: 1831-ից կազմակերպել է գր-փիլ. խմբակ: 1837-ից՝ վտարանդի:

ՍՏԱՆՅՈՒԿՈՎԻՉ Կոնստանտին Միխայլովիչ (1843–1903), ռուս գրող: Հեղինակ է «Ծովային պատմվածքներ» (1886–1902, հայ.՝ 1949) ժող-ի, «Երկրի շուրջը «Կորշուն» նավով»: (1895–96) վիպակի, նաև Ռուսաստանում հետարևելմտյան հարաբերությունների կյանքի մասին վեպերի, հրապարակախոս. գործերի, ֆելիետոնների: Հայ. հրատարակվել են «Յոթ տարերքների աշխարհում» (1967) գիրքը, «Փախուստ» (1972) պատմվածքների ժող-ը:

ՍՏԱՆՉԻՆՍԿԻ Վլադիմիր Վլադիմիրովիչ (1882–1942), ռուս. կենդանաբան, էկոլոգիայի հիմնադիրներից Ռուսաստանում: Աշխ-ները վերաբերում են կենսահամակեցությունների արդյունավետության քանակ. հետազոտություններին, նրանցում նյութերի և էներգիայի հոսքերին: Բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ՍՏԱՇԻՑ (Staszic) Ստանիսլավ (1755–1826), լեհ լուսավորիչ, կրոն. գործիչ, փիլ., հրապարակախոս: 1808-ից՝ Գիտ-յան բարեկամներ կազմ-յան (վերջինիս հիմքի վրա ստեղծվել է Լեհաստանի ԳԱ-ն) նախագահ: Ս-ի գաղափարները մեծապես ազդել են սեյմի (1788–92) գործունեության վրա:

ՍՏԱՍՈՎ Վասիլի Պետրովիչ (1769–1848), ռուս. ճարտ.: Վ. Վ. *Ստասովի* հայրը: Նրա կառուցած Պավլովյան զորանոցները (1817–21), Պրեոբրաժենսկի (Պայծառակերպության, 1827–29) և Տրոիցկի (Սբ Երրորդության, 1828–35) տաճարները, Նարվայի (1824–33) և Մոսկվայի (1834–38) հաղթադարպասները Ս. Պետերբուրգում և այլ շինություններ առանձնանում են ճարտ. ձևերի հանդիսավորությամբ:

ՍՏԱՍՈՎ Վլադիմիր Վասիլևիչ (1824–1906), ռուս. գեղ. և երաժշտ. քննադատ, արվ-ի պատմաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. անդամ (1900): Վ. Պ. *Ստասովի* որդին: Աշխ-ները վերաբերում են ռուս կոմպոզիտորներին, նկարիչներին, արվ-ին, ինագիտ-յանը, պատմությանը, բանասիրությանը, բանագիտ-յանը: Անդրադարձել է հայ մանրանկարչությանը, հատկապես՝ զարդարվ-ին, նաև Հ. Այվազովսկու, Վ. Սուրենյանցի արվ-ին: Ա. Սպենդիարյանը գրել է «Վ. Վ. Ստասովի հիշատակին» կանտանտը (1907):

ՍՏԱՎԱՆԳԵՐ (Stavanger), ք. Նորվեգիայի հվ-արմ-ում, Ռուգալան կոմսության վարչ. կենտրոնը: Բն.՝ 197 հզ. (2010): Նվինգստ՝ Հս. ծովի ափին: Ունի օդանավակայան: Հս. ծովում նավթի և գազամուղի հիմն. կենտրոնն է:

ՍՏԱՎԲԻԴԱՆԵՐ (Trachurus), *պերկեսակերայների* կարգի ձկների սեռ: Երկ.՝ մինչև 50 *սմ*, կ. զ.՝ մինչև 400 *գ*: Հայտնի է 12 տեսակ՝ բարեխառն և արևադարձ. ջրերում: Արդյունագործ. ձուկ է:

ՍՏԱՎԲՈՊՈԼ, ք. (1785–ից, 1935–43–ին՝ Վորոշիլովսկ) ՌԴ-ում, Ստավրոպոլի երկրամասի վարչ. կենտրոնը: Բն.՝ 366,1 հզ. (2009): Ունի բուհեր, 2 թատրոն, 3 թանգարան: Հիմնադրվել է 1777-ին:

ՍՏԱՎԲՈՊՈԼԻ ԵՐԿՐԱՄԱՍ, ՌԴ Հս-կովկաս. դաշն. օկրուգում: Տարածքը՝ 66,2 հզ. *կմ²*. բն.՝ 2007 հզ. (2009): Ունի 26 շրջան, 19 քաղաք, 7 քտա: Վարչ. կենտրոնը՝ Ստավրոպոլ ք.: Կազմավորվել է 1934-ին (1934–37-ին՝ Հս-կովկաս., 1937–43-ին՝ Օրջոնիկիձեի երկրամաս) Նախակովկասի կենտր. մասում՝ Ստավրոպոլի բարձունքի կենտրոնում, իվ-ում Մեծ Կովկասի նախալեռներն են: Գլխ. գետերն են Կուբանը, Կուման: Բազմաճյուղ գղտ-յան շրջան է:

ՍՏԱՎԲՈՊՈԼԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏԲՈՆ, գործել է 1920–26-ին (հիմնադիր-ղեկ.՝ Վավիկ Վարդանյան): Թատերախմբում էին Հ. Բաղդասարյանը, Ե. Աղամյանը, Ա. Աղասյանը, Է. Վարդանյանը և ուր.: Բեմադրություններից են՝ Շիրվանզադեի «Պատվի համար», «Նամուս», «Մեծապատիվ մուրացկաններ» (ըստ Հ. Պարոնյանի), Մոլիերի «Սկապենի արարքները» ևն:

ՍՏԱՎԲՈՊՈԼՅԱՆ ՈՋԽԱՐԻ ՑԵՂ, բրդատու նրբագեղմ ոչխարների ցեղ: Ստացվել է Ստավրոպոլի երկրամասում նորկովկաս. մերինոսների բարելավման և նրանց ու ամերիկ. ռամբուլիեի, ապա՝ Գրոզնու ցեղերի տրամախաչման միջոցով: Խոյերի բրդատվությունը՝ 14–19, մաքիներինը՝ 7–8 *կգ*, կ. զ., համապատասխանաբար՝ 100–115, 30–55 *կգ*:

ՍՏԱՏԻԿԱ, *մեխանիկայի* բաժին. ուսումնասիրում է մարմինների հավասարակշռության պայմանները տարբեր ուժերի ազդեցությունների դեպքում: Տարբերում են պինդ մարմնի, հեղուկների (հիդրոստատիկա) և գազերի (աերոստատիկա) Ս.:

ՍՏԱՏԻԿՈՐԵՆ ԱՆՈՐՈՇԵԼԻ ՀԱՄԱԿԱՐԳ (շին. մեխանիկա), երկրաչափորեն անփոփոխելի համակարգ, որտեղ կամայական ստատիկ բեռնվածքի (հենարան., առանցք. ամրացումների լարումներ) դեպքում կապերի ռեակցիայի որոշման համար, բացի ստատիկայի հավասարումներից, անհրաժեշտ են լրացուցիչ՝ համակարգի ձևախախտումները բնութագրող հավասարումներ: Եթե խնդրի լուծման համար ստատիկայի հավասարումները բավարար են, ապա համակարգը կոչվում է ստատիկորեն որոշելի:

ՍՏԱՏԻԿՈՐԵՆ ՈՐՈՇԵԼԻ ՀԱՄԱԿԱՐԳ (շին. մեխանիկա), երկրաչափորեն անփոփոխելի համակարգ, որտեղ բոլոր կապերի հակազդեցությունները որոշելու համար, ցանկացած ստատիկ. բեռնվածության դեպքում, բավարար են ստատիկայի հավասարումները:

ՍՏԱՏՈԼԻԹՆԵՐ (< հուն. statos – կանգուն և *...լիթ*), մանր, շարժուն օսլայե հատիկներ բույսերի արմատների և ածող այլ մասերի ծածկաշերտի բջիջներում: Ս-ի առանցքի ուղղությունը փոխվելիս դրանք հակվելով առաջացնում են երկրամիտություն (*գեոտրոպիզմ*):

ՍՏԱՏՈՐ (անգլ. stator, < լատ. sto – կանգնել), էլ. մեքենաների անշարժ մասը, որը կատարում է մագնիսահաղորդչի և կրող կառուցվածքի գործառույթ: «Ս.» եզրույթն օգտագործում են հիմնականում փոփոխ. հոսանքի մեքենաների համար: Ս. կազմված է միջուկից (նրա փաթույթի հետ) և իրանից:

ՍՏԱՏՈՑԻՍՏՆԵՐ (< հուն. statos – կանգուն և kystis – բուշտ), 1. անողնաշարների լողդ. բշտիկներ, հավասարակշռության օրգաններ: 2. Բույսերի բջիջներ, որոնց մեջ առաջանում են *ստատոլիթները*:

ՍՏԱՏՈՒՍ, քաղաքացիների իրավ. կարգավիճակ (իրավունքի և պարտականությունների ամբողջություն):

ՍՏԱՏՈՒՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, սոցիալ. համակարգում անհատի կամ խմբի կարգավիճակ, որը որոշվում է տնտ., մասնագիտ., էթնիկ. և մի շարք այլ հատկանիշներով, որոնք բնորոշ են տվյալ չափանիշների համակարգին (սեռ, կրթություն, մասնագիտ-յուն, շահույթ ևն): Առանձնացվում են «վերագրյալ» (ժառանգվող) և «հասանելի» (մարդու սեփ. ջանքերի շնորհիվ) Ս. ս.: Յուրաքանչյուր Ս. ս. ունի որոշակի վարկ:

ՍՏԱՏՈՒՍ ՔՎՈ (լատ.՝ Status quo – բառացի՝ դրություն), եզրույթ միջազգ. իրավունքում, որը կիրառվում է որևէ պահի գոյություն ունեցող կամ ունեցած փաստ. կամ իրավ. այն դրությունը նշելու համար, որի վերականգնման կամ պահպանման մասին խոսվում է: 1994-ից Ս. ք. ունի Լ ՂՀ:

ՍՏԱՏՈՒՏ (լատ.՝ statuere – որոշել), 1. կանոնադրություն, կանոնագիրք, որով սահմանվում է ներպետ. կամ միջազգ. կազմ-յան կազմակերպման ու գործունեության կարգը: 2. Միջնադար. քաղաքների և ներքաղ. միավորումների իրավ. դրությունը սահմանող կանոնագիրք: 3. Որևէ բանի մասին կանոնադրություն, օր.՝ շքանշանի կանոնադրություն, որով սահմանվում է նրա նկարագրությունը, պարգևատրման կարգը: 4. Մեծ Բրիտանիայի խորհրդարանի որոշ օրենսդր. ակտեր (օր.՝ Վեստմինստերյան Ս. 1931), ԱՄՆ-ում՝ Կոնգրեսի որոշ ակտերը:

ՍՏԱՐԱ ԶԱԳՈՐԱ, ք. Բուլղարիայի կենտր. մասում՝ Սրեդնա Գորա լ-ան հվ. ստորոտին, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 143, 7 հզ. (2010): Գղտ-յան շրջանի կենտրոն է:

ՍՏԱՐԱ ՊԼԱՆԻՆԱ ԼԵՌՆԵՐ, Բուլղարիայում (արմ. ճյուղը՝ Սերբիայում): Ա.րմ–արլ. երկ.՝ 555 *կմ*, բարձր.՝ 2376 *մ* (Բոտև լ.): Տրոհված է Իսկիր, Լուդա Կամչիա գետերի հովիտներով: Ս. Պ. լ-ում է Շիպկա լ-անցքը: Ծածկված է լայնատերև ու ասղատերև անտառներով, մարգագետիններով: Կան հանք. աղբյուրներ, առողջարան:

ՍՏԱՐԵՎԻՉ Վլադիսլավ Ալեքսանդրովիչ (1882–1965), ռուս. ռեժ., նկարիչ, օպերատոր: Ռուս. անիմացիոն կինոյի հիմնադիրը: Աշակել է ծավալ. մուլտիպլիկացիայի տեխ. սկզբունքները, ռուս մուլտիպլիկատորներից առաջինն է անդրադարձել գրաֆիկ. մուլտիպլիկացիային: Նկարահանել է «Կինեմատոգրաֆիական օպերատորի վրիժառությունը» (1912), «Ճպուռն ու մրջյունը» (1913), «Աքլորը և Պեգասը» (1914), «Ռեյնեկե Աղվեսը» (1939), «Զարխոտի ծաղիկը» (1949) և այլ մուլտֆիլմեր: Նկարահանվել է կինոյում: 1919-ից՝ Ֆրանսիայում:

ՍՏԱՐԻ ԿՐԻՄ, *Հին Ղրիմ, Սուրխաթ*, ք. ՌԴ Ղրիմի Հանրապետությունում: Գոյություն է ունեցել դեռևս մինչև թաթար-մոնղոլների կողմից Ղրիմի գրավումը (XIII դ.) և մինչև XIV դ. կոչվել է Սուրխաթ, իսկ մինչև Ղրիմը Ռուսաստանին միանալը (1783)՝ Էսկի Ղրիմ: «Սուրխաթ» բառը քաղաքին մերձակա լեռան և Սբ Խաչ վանքի հայ. անվանման՝ ջնովացիների աղավաղած ձևն է:

Ս. Կ–ում հայերը հաստատվել են XIII դ–ում: XV դ–ի կեսին Սուրխաթի հայ բնակչությունն աճել է Կաֆայից եկած հայերի հաշվին: XIV–XV դդ–ում Ս. Կ. քարավան. առևտրի խոշոր հանգույց էր. առևտրի մեծ բաժինը պատկանում էր հայերին: XVI–XVII դդ–ում Սուրխաթն իր տնտ. առաջնային դերն աստիճանաբար զիջել է Ղարասուբազարին, և հայերի թիվն աստիճանաբար պակասել է: Սուրխաթը հայ գրչության կենտրոններից էր, XIV–XVII դդ–ում այնտեղ ստեղծվել են բազմաթիվ հայ. ձեռագիր մատյաններ:

Ղրիմը Ռուսաստանին միացնելուց հետո Պավել I–ի 1799–ի հոկտ. 28–ի հրովարտակով Ս. Կ. (շրջակա 12 դեսյատին հողով) տրվել է հայերին: 1808–ից քաղաքում գործել է հայկ. դատարան (ռատուշա): Մինչև XIX դ–ի վերջը Ս. Կ. գրեթե հայկ. քաղաք էր, ուներ 2000 հայ բնակիչ: XIX դ–ի վերջին քաոորդում հայերն սկսել են տեղափոխվել այլ քաղաքներ: 1991–92–ից Ս. Կ–ի հայ համայնքն սկսել է վերականգնվել:

ՍՏԱՐԻ ՕՍԿՈԼ (մինչև 1655–ը՝ Օսկոլ), ք. ՌԴ Բելգորոդի մարզում՝ Օսկոլ գետի ափին: Բն.՝ 221,1 հզ. (2009): Երկթղ. հանգույց է: Հիմնադրվել է 1593–ին: Զինվ. փաոքի քաղաք է (2011):

ՍՏԱՐԻԿ Իոսիֆ Եվսեևիչ (1902–1964), ռուս քիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1946): Աշխ–ները վերաբերում են լեռն. ապարների տարիքի որոշման ճառագայթաակտիվ եղանակներին:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1949, 1951, 1953):

ՍՏԱՐՉԻՆՈՎ, Վյաչեսլավ Իվանովիչ (ծ. 1940), ռուս հոկեյիստ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1963): Մանկավարժ. գիտ. թեկնածու: Օլիմպ. խաղերի (1964, 1968), աշխարհի (1963–71), Եվրոպայի (1963–70), ԽՍՀՄ (Մոսկվայի «Սպարտակի» կազմում՝ 1962, 1967, 1969) տափօղակով հոկեյի չեմպիոն:

ՍՏԱՐՈԴՈՒԲՑԵՎ, Վասիլի Ալեքսանդրովիչ (1931–2011), ռուս. պետ. և հաս. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1976): ՌԴԳԱ թղթ. անդամ (1988): 1986–ից՝ Կոլտնտ–յունների համառուս. խորհրդի, 1990–91–ին՝ ԽՍՀՄ գյուղաց. միության նախագահ: 1991–ին ԳԿՉՊ գործունեությանը մասնակցելու համար ենթարկվել է քր. պատասխանատվության, 1992–ին ազատվել է կալանքից (Պետ. դուման ներել է 1994–ին): 1997–2005–ին՝ Տուլայի նահանգապետ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1979):

ՍՏԱՐՈՎ, Իվան Եվգենևիչ (1745–1808), ռուս. ճարտ.: Ռուս. կլասիցիզմի հիմնադիրներից: Ս. Պետերբուրգի Տավրիկյան պալատը (1783–89), Ալեքսանդր Նևսկու մայրավանքի Տրոիցկի (Սբ Երրորդության) տաճարը (1776–90) աչքի են ընկնում ճարտ. կերպարի հստակությամբ և պլաստիկ. ամբողջականությամբ:

ՍՏԱՅԻՈՆԱՐ ՎԻՃԱԿ, համակարգի վիճակ, որում նրա էական բնութագրիչ մեծությունների (տարբեր դեպքերում՝ տարբեր) արժեքները ժամանակի ընթացքում չեն փոխվում: Օր.՝ տատանող. համակարգը Ս. վ–ում է, եթե նրա տատանման ամպլիտուդն ու հաճախությունը ժամանակի հետ չեն փոխվում:

ՍՏԱՅԻՈՒՍ (Statius) Պուբլիոս Պապինիոս (մոտ 40–մոտ 96), հռոմեացի բանաստեղծ: Հեղինակ է «Թերեբեական» և «Աքիլլեսական» (անավարտ) պոեմների, «Սիլվի» («Անտառներ») բանաստեղծությունների ժող–ների (5 գիրք) ևն:

ՍՏԱՈՒՆԻՆԳ (Stauning) Տորվալդ (1873–1942), Դանիայի ս–դ. կուս–յան (ԴՍԴԿ) նախագահ՝ 1910–42–ին: Ռիգսդագում ԴՍԴԿ ֆրակցիայի նախագահ՝ 1910–29–ին (ընդմիջումով): 1924–26, 1929–40 և 1940–42–ին՝ վարչապետ:

ՍՏԱՖԻԼԻՆԻԴՆԵՐ, ***կարճավերնաթևավորներ***, *pզեզների* ընտանիք: Վերնաթևերը կարճ են (երկ.՝ մինչև 4 *սմ*): Հայտնի է ավելի քան 20 հզ. տեսակ: Հիմնականում գիշատիչ են, որոշ տեսակներ՝ բուսակեր. վնասում են գղտ. մշակաբույսերը, անտառ. տեսակները, ոչնչացնում են արմատ. և ցողուն. վնասատուների թրթուրները:

ՍՏԱՖԻԼՈԿՈԿԵՐ (< հուն. staphyle – ողկույզ և *կոկեր*), գնդաձև անշարժ բակտերիաների սեռ. բազմանալիս առաջացնում են ողկուզաձև կուտակումներ: Հանդիպում են մարդու և կենդանիների մաշկի վրա, օդում, ջրում, հողում: Առաջացնում են մարդու ստաֆիլոկոկ. վարակիչ հիվանդություններ, կենդանիների ստաֆիլոկոկոզներ:

ՍՏԱՖԻԼՈԿՈԶՆԵՐ, կենդանիների, թռչունների և ճագարների վարակիչ հիվանդություններ. հարուցիչներն ստաֆիլոկոկերն են: Թռչունների Ս–ի ախտանշաններն են լուծը, կաղությունը, ձվատվության դադարումը, ճագարների՝ արյան վարակումը, թարախակույտը, կաթնագեղձի բորբոքումը:

ՍՏԱՖՖԻ (Մելքոնյան) Բագրատ Հմայակի (1913–1951), գրող: Հեղինակ է «Կանաչ քաղաք» (1932) պատմվածքների, «Նովելներ» (1938), «Վիեննական անտառի հեքիաթները» (1946) նորավեպերի ժող–ների, «Արևաշող հովիտը» (1947) վիպակի, «Ստեփան Շահումյան» (1947), «Փորձություն» (1950) վեպերի:

ՍՏԵԱՐԻՆ, սպիտակ կամ դեղնավուն, շոշափելիս՝ յուղոտ կիսաթափանցիկ զանգված, $t_{հալ.}$՝ 53–65°C: Կազմված է հիմնականում ստեարինաթթվից և պալմիտինաթթվից: Օգտագործում են ռետինի արդ–յան և մոմերի (պարաֆինի հետ խառնուրդում) արտադր–յան մեջ:

ՍՏԵԱՐԻՆԱԹԹՈՒ, $C_{17}H_{35}COOH$, օկտադեկանաթթու, ալիֆատիկ միահիմն հագեցած կարբոնաթթու, անգույն, բյուրեղ. նյութ է, $t_{հալ.}$՝ 69,6°C: Ս–ի աղերն ու էսթերները կոչվում են ստեարատներ: Էսթերների ձևով պարունակվում է բուս. և կենդ. ճարպերում: Պալմիտինաթթվի հետ խառնուրդը ***ստեարինի*** հիմքն է: Ս–ի աղերն օճառի բաղադրիչ են:

ՍՏԵԹՈՍԿՈՊ (< հուն. stetho – կուրծք և ...*սկոպիա*), փայտե կամ պլաստմասայե փողակ՝ թոքերի, սրտի, անոթների (օր.՝ արյան զարկերակ. ճնշումը չափելիս) և այլ օրգանների լսման (աուսկուլտացիա) համար: Ժամանակակից գործն. բժշկության մեջ հաճախ օգտագործում են ֆոնենդոսկոպ, որը բաղկացած է ձայնն ուժեղացնող թաղանթով ձագարից և ռետինե 2 խողովակից, որոնց ծայրերը դնում են ականջների մեջ:

ՍՏԵԼ, (հուն.՝ stele – սյուն), կենտր. կամ առանցք. գլան, բարձրակարգ բույսերի ցողունի և արմատի ներքին մասը՝ շրջապատված առաջնային կեղևով: Մեծ մասամբ կազմված է անցկացնող հյուսվածքներից՝ քսիլեմից և ֆլոեմից:

ՍՏԵԼԱ (հուն.՝ stele – սյուն), ուղղաձիգ սալաքար՝ արձանագրությունով կամ հարթաքանդակով: Հին աշխարհում Ս–ները ծառայել են որպես ***մահարձան***, հաճախ կատարել են սահմանաբաժան քարի դեր: Կանգնեցվում է որևէ կարևոր իրադարձություն հավերժացնելու համար: Տես նաև ***կոթող***:

ՍՏԵԼՄԱԽ Միխայիլ Աֆանասևիչ (1912–1983), ուկրաինացի գրող: Սոց. աշխ. հերոս (1972): Ուկր. ԽՍՀ ԳԱ ակադ. (1978): Հեղինակ է «Ճշմարտություն և անարդարություն» (1961), «Երգ քո մասին» (1969), «Չորս ծանծաղուտ» (1979) և այլ վեպերի, «Մեծ տոհմ» (1949–51), «Մարդու արյունը ջուր չէ» (1957, հայ.՝ 1962), «Աղ ու հաց» (1959) նեորգության, նաև պիեսների, պատմվածքների, բանաստեղծություններ: Ուկր. է թարգմանել Ա. Իսահակյանի գործերից: ԽՍՀՄ (1951), Ուկր. ԽՍՀ (1979) Պետ., Լենինյան (1961) մրց–ներ:

ՍՏԵԼՅԱՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ուսմունք բարձրակարգ բույսերի ***սրտիկի*** կառուցվածքի և տարբեր տիպերի փոխհարաբերությունների մասին: Ստելի մասին ուսմունքը ստեղծել են ֆրանս. բուսաբաններ Ֆ. վան Տիգեմը և Ա. Դուլիոն, հետագայում այն զարգացրել են անգլիացի բուսաբան Գ. Բրեբները, ամերիկացի Է. Ձեֆրին, գերմանացի Վ. Ցիմերմանը, խորհրդ. գիտնականներ Կ. Մեյերը և Արմեն ***Թախտաջյանը***:

ՍՏԵԿԼՈՎ, Վլադիմիր Անդրեևիչ (1863/64–1926), ռուս. մաթեմատիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ (1912), ՌԳԱ (1917), ԽՍՀՄ ԳԱ (1925) ակադ.: Աշխ–ները վերաբերում են բնագիտ–յան մեջ մաթ. մեթոդների կիրառմանը, մաթ. վերլուծությանը, առաձգականության տեսությանը, մաթ–ի պատմությանը: Ս–ի անունով է կոչվել ՌԳԱ Մոսկվայի մաթ–ի ինստ–ը:

ՍՏԵՂՆ, մի շարք երաժշտ. գործիքների մաս՝ լծակ, որին հարվածելիս ձայն է արձակվում: Սովորաբար լինում են փայտից, մի մասը երեսպատված է սպիտակ, մյուսը՝ սև ոսկրով կամ թաղանթայությամբ: Լեզվակավոր օդհունչ ստեղն. երաժշտ. գործիքներում (հարմոն, բայան ևն) կիրառվում են նաև մետաղե Ս–եր:

ՍՏԵՂՆԱՇԱՐ, որոշակի հերթականությամբ ***սրտեղների*** շարք ստեղն. երաժշտ. գործիքների վրա: Առաջինը կիրառվել է XII դ–ում երգեհոններում, որոնք, բացի ձեռքի Ս–ից (մանուալ), ունեցել են նաև ոտքերի Ս. (ոտնակային): Լեզվակավոր ստեղն. երաժշտ. գործիքների (հարմոն, բայան ևն) Ս. կազմված է կոճակներից:

ՍՏԵՅՆԻՑ (Steinitz) Վիլհելմ (1836–1900), ավստրիացի շախմատիստ (ծագումով՝ հրեա), շախմատի աշխարհի 1–ին չեմպիոնը (1886–94, փաստացի 1866–ից՝ Ա. Անդերսենին հաղթելուց հետո): Մշակել է դիրքային խաղի հիմունքները:

ՍՏԵՆԴ (անգլ.՝ stand), 1. վահանակ՝ ցուցահանդեսի ցուցանմուշների, թերթերի, աղյուսակների ևնի համար: 2. Մեքենաների հավաքման և փորձարկման հատուկ տեղ: 3. Թռչող իրերին խփելու հրաձգավարժության հրապարակ:

ՍՏԵՆԴԱԼ, (Stendhal), Անրի Մարի Բեյլ (1783–1842), ֆրանսիացի գրող: «Ռասին և Շեքսպիր» (1823, լրց.՝ 1825) աշխ–յան մեջ ձևակերպել է ռեալիստ. գրկ–յան արվ–ի հիմնադիր դրույթները: Ս–ի ստեղծագործության գլուխգործոցը «Կարմիրն ու սևը» (1831, հայ.՝ մաս 1, 2, 1941, 1949) վեպն է: Հեղինակ է «Լյուսեն Լյովեն» (1831–36, հրտ.՝ 1853), «Պարմի մենաստանը» (1839, հայ.՝ 1961) վեպերի, «Գեղանկարչության պատմությունը Իտալիայում» (հ. 1–2,

1817), «Հայդնի, Մոցարտի և Մետաստազիոյի կյանքը» (1817), «Ռոսսինիի կյանքը» (1824) աշխ-ների, «Սիրո մասին» (1822) հոգեբ. փիլ. ուսումնասիրության, «Վանինա Վանինի» (1829, հայ.՝ 1938) նովելի, «Իտալական քրոնիկներ» (1855) ժող-ի: Հայ. հրատարակվել են նաև «Մոցարտի կյանքը: Չորս նովել» (1982) գիրքը, «Նապոլեոն» (1985) պատմավեպը:

ՍՏԵՆԴԱՅԻՆ ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆ, *հրաձգային սպորտի* ենթատեսակներից: Անցկացվում է բաց հրաձգարաններում: Օլիմպ. խաղերի ծրագրում է 1900-ից, աշխարհի առաջնությունների՝ 1935-ից:

ՍՏԵՆՈ ՆԻԿՈԼԱՍ (Նիլս), **Ստենսեն** (Steno, Steensen, 1638–1686), դանիացի բնախույզ: Երկրաբուսաբ-յան հիմնադիրներից: Սահմանել է (1669) բյուրեղագիտ-յան օրենքներից մեկը, որը կոչվել է նրա անունով: Բացահայտել է հարականջ. թքագեղձի ծորանը (կոչվում է նրա անունով), նկարագրել մկանների կառուցվածքը:

ՍՏԵՆՈԲԻՈՆՏՆԵՐ (< stenos – նեղ, սահմանափակ և bion – ապրող), կենդանիներ և բույսեր, որոնք կարող են գոյատևել շրջակա միջավայրի միայն հարաբերականորեն կայուն պայմաններում:

ՍՏԵՆՈԶ (հուն.՝ stenosis – նեղացում), սնամեջ օրգանների (կերակրափող, շնչափող, աղիներ) արյունատար անոթի լուսանցքի կամ խոռոչների միջև բացվածքի (օր.՝ նախասիրտ – փորոք.) բնածին կամ ձեռքբերովի (սպիացում, ուռուցքներ), որևէ սնամեջ օրգանի (կերակրափող, կոկորդ, աղիներ ևն) կամ խոռոչների միջև բացվածքի (օր.՝ սրտի արատների դեպքում) կայուն նեղացում. դժվարացնում է նրանց պարունակության տեղաշարժը: Տես նաև *Սպազմ*:

ՍՏԵՆՈԹԵՐՄԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ (< հուն. stenos – նեղ և therme – ջերմություն), առավելապես ծով. և հող. կենդանիներ, որոնք կարող են ապրել միայն որոշակի, քիչ փոփոխվող ջերմաստիճանի պայմաններում: Օր.՝ ջերմասեր կենդանիներն ապրում են 20°C-ից ոչ ցածր պայմաններում (օր.՝ խութ. բուստեր, բազմաթիվ սողուններ ևն), սառնասերները՝ ցածր, երբեմն՝ 0°C-ին մոտ ջերմաստիճաններում (սաղմոնաձկներ, որոշ փոկեր ևն): Տես նաև *Էվրիթերմ կենդանիներ*:

ՍՏԵՆՈԿԱՐԴԻԱ, տես *Կրծքային հեղձուկ*.

ՍՏԵՆՈՏՈՊԱՅԻՆ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐ (< հուն. stenos – նեղ և topos – տեղ), բույսեր և կենդանիներ, որոնք ապրում են միայն որոշակի ապրելավայրերում (օր.՝ ավազ. ակացիան՝ միայն անապատներում, քնամոլը՝ լայնատերև անտառներում, ևն):

ՍՏԵՉԿԻՆ Բորիս Սերգեևիչ (1891–1969), հիդրո- և աերոմեխանիկայի, ջերմատեխնիկայի բնագավառի ռուս գիտնական: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1953): Սոց. աշխ. հերոս (1961): Ստեղծել է ավիաշարժիչների ջերմ. հաշվարկի, օդահոթիո. շարժիչների տեսություններ: ԽՍՀՄ Պետ. (1946), Լենինյան (1957) մրց-ներ:

ՍՏԵՉԿԻՆ Իգոր Յակովլևիչ (1922–2001), ավտոմատ զենքի ռուս. կոնստրուկտոր, ստեղծել է ինքնաձիգ ատրճանակը (ԱՊՏ – ՍԻԱ) ևն: ԽՍՀՄ Պետ. մրց. (1952):

ՍՏԵՊԱՆԵՆԿՈ Իվան Նիկիֆորովիչ (1920–2007), խորհրդ. օդաչու: ԽՄ հերոս (1944, 1945), ավիացիայի գեն-մայոր (1958): ՀՄՊ-ի ժամանակ՝ կործանիչ ավիացիայում սավառնակախմբի հրամ.: 118 օդ. մարտերում անձամբ խփել էր 33, խմբում՝ 8 ինքնաթիռ:

ՍՏԵՊԱՆԻՇՁԵՎ Միխայիլ Տիխոնովիչ (1917–1946), խորհրդ. օդաչու: ԽՄ հերոս (1944, 1945), մայոր (1944): ՀՄՊ-ի ժամանակ՝ գրոհային ավիացիայում ղեկապետ և գնդի փոխհրամ.: Կատարել է 234 մարտ. թռիչք:

ՍՏԵՊԱՆՈՎ Բորիս Իվանովիչ (1913–1987), ռուս. ֆիզիկոս: Սոց. աշխ. հերոս (1973): Աշխ-ները վերաբերում են քվանտ. էլեկտրոնիկային, ոչ գծային օպտիկային, հոլոգրաֆիային: Առաջարկել է (համահեղ.) օրգ. ներկանյութերն օգտագործել լազերներում՝ որպես աշխ. մարմին:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1950, 1972, 1982):

ՍՏԵՊԱՆՈՎ Ռուբեն Դմիտրիի (ծ. 1922), պոլիմերների մեխանիկայի և ամրության ոլորտի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր, պրոֆ.: ՌԳԱ մեխանիկայի ինստ-ի ամբիոնի վարիչ (1966–99, Մոսկվա): Ուշագրավ արդյունքներ է ստացել պոլիմեր. շերտերի ու թաղանթների կայունության՝ գազերի գերձայն. արագությունների տակ երեսպատված սարքերի հաշվարկի վերաբերյալ:

ՍՏԵՊԱՆՈՎ Վալերի Միխայլովիչ (1931–1997), ռուս կենսաքիմիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1997): Սպիտակուցների քիմիայի ռուս. դպրոցի հիմնադիրը: Աշխ-ները վերաբերում են պրոտեոլիտիկ ֆերմենտների քիմիային և էվոլյուցիոն կենսաքիմիային, պեպտիդների (այդ թվում՝ պեպտիդային քաղցրացուցիչ ասպարգամի) սինթեզի կենսակատալիտիկ մեթոդների մշակմանը:

ՍՏԵՊԱՆՈՎ Վլադիմիր Եվգենևիչ (1913–1986), ռուս աստղաֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1968): ԽՍՀՄ ԳԱ ՍԲ երկր. մագնետիզմի, իոնոլորտի և ռադիոալիքների տարածման ինստ-ի տնօրեն (1965–1986), ԳԱ Արևելասիբիր. մասնաճյուղի նախագահ (1972-ից): Լուծել է (1958–62) մագնիս. դաշտում ճառագայթման տեղափոխության խնդիրը: Ռուս. մագնիսագրի ստեղծողներից՝ Արեգակի վրա թույլ մագնիս. դաշտերի չափման համար:

ՍՏԵՊԱՆՈՎԱ Անգելինա Իոսիֆովնա (1905–2000), ռուս. դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1960): Սոց. աշխ. հերոս (1975): Ա. Ա. *Ֆադեևի* կինը: 1924-ից՝ ՄԳԱԹ (1989-ից՝ Ա. Պ. Չեխովի անվ.) դերասանուհի (Իրինա՝ Ա. Պ. Չեխովի «Երեք քույր», Ելիզավետա թագուհի՝ Ֆ. Շիլլերի «Մարի Ստյուարտ», Սիրուհի՝ Է. Օլբիի «Ամեն ինչ ավարտված է», ևն): Նկարահանվել է «Պատերազմ և խաղաղություն», «Քսան օր առանց պատերազմի», «Սիրո բացատրություն», «Հիշեք ինձ այդպիսին» (հեռուստաֆիլմ) և այլ կինոնկարներում:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1952, 1977):

ՍՏԵՊԱՆՈՎԱ Լիդիա Իլյինիչնա (1899–1962), ռուս. կինոռեժ.: Նկարահանել է «Երիտասարդությունը պաշտպանում է հայրենիքը» (1942), «Մոսկվան՝ ԽՍՀՄ-ի մայրաքաղաքը» (1948) և այլ վավերագր. ֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1947, 1948, 1949, 1950, 1952):

ՍՏԵՊԱՆՉՅՈՆՈԿ Վասիլի Անդրեևիչ (1901–1943), ռուս. փորձարկող օդաչու, գնդ.: Փորձարկել է մի շարք կործանիչներ՝ Ա. Ն. Տուպոլևի, Ն. Ն. Պոլիկարպովի կոնստրուկցիաներով: Զոհվել է ինքնաթիռի փորձարկման ժամանակ:

ՍՏԵՊՂԻՆ, նեխուրազգիների (հովանոցազգիներ) ընտանիքի երկամյա կամ բազմամյա խոտաբույսերի ցեղ: Բանջարաբույս է: Հայտնի է 15 տեսակ (Եվրասիայում), ՀՀ-ում՝ 3: Մշակում են ցանովի U. (արմատապտուղը պարունակում է շաքարներ, C վիտամին): Բերքատվությունը՝ 300–400 (երբեմն՝ ավելի) *գ/հա*:

ՍՏԵՌԱԴԻԱՆ (< հուն. stereos – մարմնային, տարածական և *ռադիան*), մարմն. անկյան չափման միավոր (*ստ*): 1. Ս. այն մարմն. անկյունն է, որը նրա գագաթի շուրջ կառուցված գնդաձև մակերևույթից հատում է գնդի շառավղի քառակուսուն հավասար մակերես: Ամբողջ գունդն ընդգրկում է 4π *ստ*-ի հավասար մարմն. անկյուն:

ՍՏԵՌԼԵԳՈՎ Դիմիտրի Վասիլևիչ (1708–1757), ռուս. ծովագնաց: 1734–42-ին՝ Կամչատկայի 2-րդ արշավախմբի մասնակից: 1740-ին Տուրուխանսկից անցել է Ենիսեյի երկայնքով, այնուհետև՝ ծովափով դեպի արլ.՝ շնաասհակով մինչև Թայմիր թ-կղզու արմ. ափերը և նկարահանել:

ՍՏԵՐԼԵՏ (Acipenser ruthenus), **չուքա**, թառափաձկների ընտանիքի ձուկ: Երկ.՝ մինչև 125 (սովորաբար՝ 40–60) *սմ*, կ. զ.՝ մինչև 16 *կգ* (որպես բացառություն): Ապրում է Սև, Կասպից, Բալթիկ, Սպիտակ և Կարայան ծովերում: Արդյունագործ., բազմացման և կլիմայավարժեցման արժեքավոր ձուկ է: Գետերի հոսքի կարգավորումը և նրանց աղտոտումը հանգեցրել են թվաքանակի նվազման: Ս-ի և *բելուգա-յի* հիբրիդը *բեստերն* է:

ՍՏԵՐԼԻՏԱՄԱԿ, ք. (1782-ից) ՌԴ Բաշկիրիայում, նվինգատ Բելայա գետի ափին: Երկթղ. կայարան է: Բն.՝ 269,7 հզ. (2009): Կան քիմ. («Կաուստիկ սոդա»), նավթաքիմ., շինանյութերի ձեռն-ներ: Ունի բուհեր, թատրոն, պատմաերկրագիտ. թանգարան: Հիմնադրվել է 1765-ին: 1919–1920-ին՝ Բաշկիր. ԻԽՍՀ-ի մայրաքաղաքը:

ՍՏԵՍՍԵԼ Անատոլի Միխայլովիչ (1848–1915), ռուս. զորապետ, գեն-լեյտ. (1901): 1904–05-ի ռուս-ճապ-ն. պատերազմի ժամանակ՝ Կվանտունյան ամրացված շրջանի պետ.: Հակառակորդին հանձնել է Պորտ Արտուր ամրոցը: Զինվ. դատարանը դատապարտել է մահապատժի, բայց Նիկոլայ II կայսրը ներում է շնորհել:

ՍՏԵՎԻՆ (Stevin) Սիմոն (1548–1620), նիդեռլանդացի մաթեմատիկոս և ճարտարագետ: Գործածության մեջ է դրել տասնորդ. կոտորակները (Եվրոպայում) և հավասարումների բացաս. արմատները: Ապացուցել է թեք հարթության վրա մարմնի հավասարակշռության մասին օրենքը՝ ելնելով հավերժ. շարժիչի անհնարինության գաղափարից:

ՍՏԵՐԵՈ... (հուն.՝ stereos – մարմնային, ծավալային, տարածական), բարդ բառերի սկզբնամաս. ցույց է տալիս ծավալայնություն կամ տարած. բաշխվածության առկայություն (օր.՝ *ստերեոկինո*, *ստերեոսկոպ* ևն), համապատասխանում է հայ. տարածա-, հաս. երևույթներում՝ կարծրա- նախածանցին (օր.՝ կարծրատիպ ևն):

ՍՏԵՐԵՈԿԻՆՈ, կինեմատոգրաֆիայի տեսակ, որի տեխ. միջոցները հնարավորություն են տալիս հանդիսատեսի համար էկրանին ստեղծելու պատկերի ծավալայնության պատրանք: Ս. հաճախ կոչվում է նաև ծավալային կամ եռաչափ կինո:

ՍՏԵՐԵՈՍԿՈՊ, **տարածադիտակ**, երկակնաօպտիկ. սարք տարածազույգերի դիտարկման համար: Հնարավորություն է

տալիս տեսնելու ծավալ. պատկեր: Կիրառում են լուսանկարչության, գեոդեզիայի, աստղագիտ–յան մեջ և այլուր:

ՍՏԵՐԵՈՍԿՈՊԱՅԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ, **տարածադիտական լուսանկարահանում**, երբ առարկան նկարում են միաժամանակ 2 կամ ավելի կետերից, արդյունքում ժապավենի վրա ստանում են 2 պատկեր տարածազույգ, որն առանձին՝ աջ և ձախ աչքերով դիտելիս, ստանում է ծավալայնություն: Կատարում են հատուկ կամ սովոր. (սակայն լրացուցիչ կցորդներով) լուսանկարչ. ապարատներով:

ՍՏԵՐԵՈՌԻՄԻԱ, տես *Տարածական քիմիա*:

ՍՏԵՐԵՈՖՈՆԱՅԻՆ ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, **տարածածավալային ձայնագրություն**, ձայնագրության տեսակ, որի հնչյունագիրը պարունակում է տեղեկույթ ձայն. աղբյուրների տարած. դասավորության մասին: Ս. ձ–յան ժամանակ տարբեր լսափողների էլ. ազդանշանները ձայնագրվում են առանձին, մի քանի կապուղիներով. վերարտադր–յունը նույնպես առանձին է և լսողի վրա թողնում է հնչողության ծավալայնության տպավորություն: Առավել տարածված է երկկապուղային Ս. ձ.:

ՍՏԵՐԻՆՆԵՐ, **ստերոլներ**, ստերոիդների դասի բազմացիկլ սպիրտներ: Պարունակվում են բոլոր օրգանիզմների կենսբ. թաղանթներում: Մարդկանց և կենդանիների հիմն. Ս. խոլեստերինն է: Օգտագործվում են ստերոիդ. հորմոնների և D խմբի վիտամինների արդ. ստացման համար:

ՍՏԵՐԼԽ (Grus leucogeranus), **սպիտակ կռունկ**, կռունկների ընտանիքի թռչուն: Երկ.՝ 1,2–1,4 *մ*: Ռուսաստանի բնաշխարհիկ է. ապրում է Յակուտիայի տունդրայում և անտառատունդրայում: Ձմեռում է Հնդկաստանում, Չինաստանում: Ամենուր հազվագյուտ է, գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՍՏԵՐԿԱԼԻԱԶԳԻՆԵՐ, երկշաքիլ բույսերի ընտանիք: Ծառեր են, թփեր, հազվադեպ՝ խոտաբույսեր: Հայտնի է 700 տեսակ (60 ցեղ)՝ հիմնականում՝ արևադարձներում: Կարևոր տնտ. նշանակություն ունեն շոկոլադի ծառը կամ կակաոն և գեղազարդիչ (ստերկալիա ևն) Ս–ի տեսակները:

ՍՏԵՐՈՒԴՆԵՐ, օրգ. միացությունների դաս, բազմացիկլ սպիրտներ, կետոններ, թթուներ ևն: Լայնորեն տարածված են բնության մեջ: Ս. են ստերինները, D խմբի վիտամինները, սեռ. հորմոնները, մակերիկամների հորմոնները (կորտիկոստերոիդներ): Ստերոիդ. գլիկոզիդների (այդ թվում՝ սրտային գլիկոզիդների) մոլ–ների բաղադրիչ են: Շատ Ս. ստանում են քիմ. և մանրէաբան. սինթեզով:

ՍՏԵՐՋՈՒԹՅՈՒՆ, **ստերիլություն**, 1. օրգանիզմի՝ գամետներ առաջացնելու անընդունակությունը (լրիվ Ս.) կամ նրանց քանակի անբավարարությունը (մասնակի Ս.): Օրգանիզմի անհատ. զարգացման որոշակի փուլերում բնականոնին բնորոշ Ս. կոչվում է տարիքային: Մարդու և կենդանիների Ս. հաճախ անվանում են *անպտղություն*: Կարող է լինել ժառանգ. կամ արտաքին գործոններով պայմանավորված: Երբեմն Ս. առաջացնում են արհեստականորեն: 2. Օրգանիզմում կամ որևէ նյութում կենսունակ բջիջների կամ միկրոօրգանիզմների սպորների բացակայությունը:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ (490–ական թթ.–1847–ը՝ Վարարակն, 1847–1923–ը՝ Խանքենդ, 1923–ից անվանվել է Ս.՝ ի պատիվ Ստեփան *Շահումյանի*), ԼՂԻՄ–ի (1921–92) և ԼՂՀ (1992–ից) մայրաքաղաքը՝ Ղարաբաղի լ–շղթայի արլ. սարավանդի վրա՝ Կարկառ գետի ափին: Տարածքը՝ 16 *կմ*², բն.՝ 60 հզ. (2014): Ս–ում գործում են կոշիկի, կահույքի, գորգագործ., շինանյութերի, սննդի, ժամացույցների և այլ ձեռն–ներ: Ունի օդանավակայան, բուհեր, թատրոն, ԲԿ, ռազմ. հոսպիտալ ևն: Ս–ում իրենց ներկայացուցիչներն ունեն մի շարք միջազգ. (ԵԱՀԿ, Կարմիր խաչ ևն) և հաս. («Փրկենք երեխաներին», Ամերիկայի հայկ. համագումար, 2010, ևն) կազմ–յուններ:

«ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ», հաս., քաղ., մշակութ. շաբաթաթերթ (1997–ից, Ստեփանակերտ): Քաղաքապետարանի պաշտոնաթերթ: Խմբ–ներ՝ Լևոն Մկրտչյան, Միլվա Խաչատրյան, Անահիտ Քոչարյան, Սոֆյա Սարգսյան:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ պետական, Վահրամ Փափազյանի անվան (1989–ից), հիմնադրվել է Կարո *Ալվարյանի* (նաև գեղ. ղեկ.) նախաձեռնությամբ 1932–ին (կոչվել է Մ. Գորկու անվ.) Ստեփանակերտում: Թատրոնը ղեկավարել են Գ. Թավրիզյանը, Բ. Բժիկյանը, Հ. Կարապետյանը, Ռ. Սարգսյանը, Ա. Գամջյանը, Լ. Հարությունյանը և ուր., Մ. Դավթյանը (2009–ից): Թատրոնում հանդես են եկել դերասաններ Գ. Հարությունյանը, Մ. Կորգանյանը, Թ. Մելքումյանը, Ն. Հովսեփյանը, Ն. Ասատրյանը, Բ. Օվչյանը, Ժ. Գալստյանը, Ք. Հարությունյանը, Ս. Թովմասյանը, Մ. Ազոյանը և ուր.: Բեմադրվել են Մ. Գորկու «Հատակում», Գ. Սունդուկյանի «Պեպո», Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», Մուրացանի «Ռուզան», Վ. Հակոբյանի «Արցախյան բալլադ», Ռ. Աբրահամյանի «Սուրբ Շուշանիկ», Մ. Միտրովիչի «Կողոպուտ կեսգիշերին», Ժ. Անանյանի «Ես չեմ ուզում դառնալ միլիոնատեր» և այլ պիեսներ: ԼՂՀ «Մեսրոպ Մաշտոց» շքանշան (1992):

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ Սայաթ–Նովայի անվան (1963–ից), 2006–ից՝ քոլեջ: Հիմնադրվել է 1961–ին: Մասնաճյուղը գործել է Շուշիում 1972–88–ին: Ունի դաշնամուր., լար., փող., ժող. գործիքների, խմբավարության, մեներգեցողության, երաժշտության տեսության բաժիններ, ժող. գործիքների նվագախումբ, երգչախումբ: 1998–ից կից գործում է արվ–ի վարժարան:

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ (մինչև 1923–ը՝ Ձալալօղլի), ք. ՀՀ Լոռու մարզում՝ Ձորագետի ափին՝ 1400 *մ* բարձր–յան վրա: Վերանվանվել է ի պատիվ Ստեփան *Շահումյանի*: Սպիտակի 1988–ի երկրաշարժից հետո տնտ–յան բոլոր ճյուղերում խիստ կրճատվել է արտադրանքի թողարկման ծավալը: Գործում են թատրոն, երաժշտ. ուսումնարան, համալսարան, գղտ. քոլեջ, հիվանդանոց, «Անահիտ», «Վահագն» և այլ պանսիոնատներ, Ս. Շահումյանի տուն–թանգարանը, դենդրոպարկը ևն:

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԹԱՏՐՈՆ, թատեր. առաջին ներկայացումները տեղի են ունեցել XIX դ–ի վերջից՝ տեղի թատերասերների ուժերով: Որպես պետ. թատրոն՝ գործել է 1935–51–ին: 1959–ին կազմակերպվել է Ա. Վերմիշևի անվ. ժող. թատրոնը: Բեմադրություններից են՝ Գ. Բորյանի «Նույն հարկի տակ», Լ. Միքայելյանի «Վարազդատ», Խուգաևի «Իմ կնոջ ամուսինը» ևն:

ՍՏԵՓԱՆԵ (ծ. թ. անհտ–1165), Կիլիկիայի իշխան, զորավար՝ *Ռուբինյանների* տոհմից: *Թորոս Բ*–ի և *Մլեհի* եղբայրը, *Ռուբեն Գ*–ի և *Լևոն Բ Մեծագործի* հայրը: 30 տարուց ավելի գլխավորել է (Մլեհի հետ) հայկ. բանակը: Պայքարել է երկրի ազատագրման և 1137–ից ընդհատված հայրենի իշխան. գահի վերականգնման (1145) համար: Իրագործում էր Սև լեռների շրջանը բյուզ. տիրապետությունից ազատագրելու ծրագիր: Սակայն Համուս բերդի հույն դուկը նենգորեն ձերբակալել է Ս–ին և հեղձամահ արել:

ՍՏԵՓԱՆԵ Խորեն (Ստեփանոս Հարությունի Ստեփանյան, 1840–1900), հոգևոր գործիչ, խմբ., թարգմանիչ: Ծ. վրդ. (1880): Եպս. (1894): 1896–ին ցար. կառ–յան հրամանով աքսորվել է Ղրիմի Սբ Խաչ վանք, եղել է վանահայրը: Ս. 1869–ին Թիֆլիսում հիմնադրել է Մարիամյան օրիորդաց, Հավլաբարի առաջին երկսեռ դպրոցները, եղել թեմական դպրոցների տեսուչ: 1864–79–ին՝ *«Հայկական աշխարհ»*, 1884–87–ին՝ *«Մանկավարժանոց»* հանդեսների հիմնադիր–խմբ., 1879–80–ին՝ Սայր աթոռի *«Արարատ»* ամսագրի խմբ.: Ս. աշխարհաբարի է փոխադրել և իր առաջաբանով ու ծնթգր–ներով հրատարակել Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոցը» (1889), կատարել է թարգմ–յուններ: Հեղինակ է բանաստեղծությունների, «Հայկական այբուբեն» (1870) ուսումնասիրության:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Ալբերտ Անդրանիկի (ծ. 1948), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1991), պրոֆ. (1992): Հետազոտությունները վերաբերում են հայ–հոռմ. ռազմաքաղ. և իրավ. հարաբերությունների, հին հայոց հաս. մտքի զարգացման, անտիկ քաղաքակրթության, իմաստասիրության և պատմագրության հիմնահարցերին: Հեղինակ է «Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում» (2012), «Պատմության հետագիծը: Գործք գրույթ, իմաստ» (2014) և այլ աշխ–ների: Կատարել է թարգմ–յուն հին հուն–ից (Պլոտինոս, «Էննեադներ», ուսումնասիրություն, մեկնություն, 1999):

ՍՏԵՓԱՆՅԱՆ Անժելա Մարտիրոսի (1917–2002), արձակագիր: Հեղինակ է «Քույրեր» (1947), «Ոսկե մեդալ» (1952), «Ամառնամուտ» (1959), «Գունավոր քայլեր» (1967), «Մորմոք» (1982) վեպերի, «Անծանոթ ծանոթներ» (1964), «Երբ իջնում է երեկոն» (1974) պատմվածքների, վիպակների ժող–ների, մանկ. գրքերի:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Արմենակ Լևոնի (1900–1974), քանդ.: Սուրեն *Ստեփանյանի* եղբայրը: Աշխատել է դեկորատիվ քանդ–յան (հատկապես՝ պարտեզապուրակ.) բնագավառում («Լողորդուհի», «Մարզուհի» ևն): Ստեղծել է նաև պատերազմ. թեմայով քանդակներ, դիմաքանդակներ, խեցեգործ. հորինվածքներ («Մայրություն», 1940, «Մեսրոպ Մաշտոց», 1966, ևն):

ՍՏԵՓԱՆՅԱՆ Գագիկ Վարազդատի (ծ. 1950), քանդ.: Հեղինակ է Հակոբոս Աղաթայլի (Ջերեդյան) հարթաքանդակի (2001, Երևանի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի), Հ. Շահինյանի հուշաքանդակի (2002, Երևան), Իսրայել Օրու (2004, Ջերմուկ), Գարեգին Նժդեհի (2016, Երևան) հուշարձանների ևն:

ՍՏԵՓԱՆՅԱՆ (Տեր-Ստեփանյան) Գառնիկ Խաչատուրի (1909–1989), գրականագետ, թատերագետ, խմբ.: Արվեստագիտ. դ-ր (1971): ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1967): Պերճ ***Ստեփանյանի*** և Արմեն ***Տեր-Ստեփանյանի*** հայրը: Հեղինակ է «Արփիար Արփիարյան» (1955), «Հակոբ Պարոնյան» (1956) գրականագիտ., «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության» (հ. 1–3, 1962–75), «Ֆրանսահայ թատրոն (Ակնարկներ սփյուռքահայ թատրոնի պատմության)» (հ. 1, 2, 1982, 2008) թատերագիտ. աշխ-ների, «Հրաչյա Աճառյան: Կյանքը և գործը» (2013) մենագրության, «Աճառյանի հետ» (1976), «Վահրամ Փափազյանի հետ» (1979), «Հոդվածներ և հուշեր» (1985) հուշագրությունների, «Սիձավանջային օրեր» (1945) վեպի, «Երզնկա: Հնագույն դարերից մինչև մեր օրերը» (հրտ.՝ 2005) պատմագիտ-գավառագիտ. աշխ-յան: Կազմել է «Կենսագրական բառարան (Հայ մշակույթի գործիչներ)» (հ. Ա–Գ, 1973–90, Դ-ն՝ անտիպ): ՀԽՍՀ Պետ. մրց. (1980):

ՍՏԵՓԱՆՅԱՆ Գևորգ Սրապիոնի (ծ. 1966), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (2009), պրոֆ. (2013): Հիմն. աշխ-ները՝ «Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին (2010), «Բաքու քաղաքի հայության պատմությունը (ուսումնասիրություն, 2011), «Շամախի քաղաքի հայերի պատմությունից» (2014):

ՍՏԵՓԱՆՅԱՆ Էմիլ Ստեփանի (1923–1987), ֆթիզիատր: Բժշկ. գիտ. դ-ր (1969): Աշխ-ները վերաբերում են կլինիկ. ֆիզիոլոգիայի, տուբերկուլոզի քիմիաբուժության, հակատուբերկուլոզ. պատրաստուկների ազդեցության խնդիրներին:

ՍՏԵՓԱՆՅԱՆ (Մելիքյան) Էմմա Մելիքի (1915–1989), դերասանուհի: ՀԽՍՀ վաստ. (1964), ՎԽՍՀ ժող. (1978) արտիստ: 1934–44-ին՝ Երևանի բանվ., ԵՊՀԹ, 1944-ից՝ Թբիլիսիի հայկ. թատրոնների դերասանուհի (Սառա՝ «Սպանված աղավնին»՝ ըստ Նար-Դոսի, Ամալյա՝ Ֆ. Շիլլերի «Ավազակներ», Թագուհ՝ Ա. Կոթինկյանի «Օժիտով հարսնացուն», ևն): Նկարահանվել է Դեղիի դերում («Գիքոր», 1982, Հայֆիլմ):

ՍՏԵՓԱՆՅԱՆ Իսրայել Գալուստի (1924–2000), հետախույզ: Փառքի երեք աստիճանների շքանշանակիր (1944, 1944, 1945): ՀՄՊ-ի ժամանակ մասնակցել է Արմավիրի, Կազանկի, Կրասնոդարի մարտերին, կռվել Հայկ. 89-րդ (Թամանյան) դիվիզիայի կազմում: Աչքի է ընկել Հս. Կովկասի, Ղրիմի, Լեհաստանի ազատագրման մարտերում:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Լևոն Ավանեսի (Հովհաննեսի, 1924–2004), ռազմ. պատմաբան, գնդ.: 1952–87-ին պատասխանատու պաշտոններ է վարել ՀՀ ՆԳՆ-ում: ԽՍՀՄ ՆԳՆ վաստ. աշխատող: Ուսումնասիրությունները վերաբերում են ՀՄՊ-ում հայ ժողգ-ի մասնակցությանը, հայ ռազմ. գործիչներին, երիտասարդության ռազմահայրենասիր. դաստիարակության հարցերին:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Լևոն Վլադիմիրի (ծ. 1950), բանակի գեն-մայոր (1994): 1972–90-ին ծառայել է ԽՍՀՄ սահմանապահ զորքերում: ՀՀ ԱԱԾ պատվ. աշխատող (1996), ՍՊՀ երկրների պատվ. սահմանապահ (2010): 1982-ին մասնակցել է Աֆղանստանում ԽՍՀՄ ռազմ. գործողություններին: 1991–93-ին՝ ՀՀ զինկոմ, կազմակերպչ-զորահավաք. վարչության պետ, ԳՇ պետի 1-ին տեղակալ: Ս. մասնակցել է առաջին ինքնապաշտպ. կազմավորումների, ՀՀ բանակի և սահմանապահ զորքերի ստեղծմանը: 1993–2003-ին՝ ՀՀ ԱԱ սահմանապահ զորքերի հրամ., 2011-ից՝ ՍՊՀ երկրների Սահմանապահ զորքերի հրամ-ների խորհրդի նախագահի խորհրդական: ՌԲՆԳԱ անդամ (2001):

ՍՏԵՓԱՆՅԱՆ Հայկ Գալուստի (1902–1971), ֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ-ր (1949), պրոֆ. (1991): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1962): Աշխ-ները վերաբերում են բնական ստամոքսահյութի կենսբ. խթանիչ և բուժիչ հատկություններին: Հայաստանի ֆիզիոլոգների ընկ-յան նախագահ (1958–62):

ՍՏԵՓԱՆՅԱՆ Հասմիկ Ավետիսի (ծ. 1950), պատմաբան, աղբյուրագետ: Պատմ. գիտ. դ-ր (2005): Հեղինակ է «Հայատառ թուրքերեն գրականությունը» (2001), «Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում» (2011) աշխ-ների: Կազմել և հրատարակել է «Հայատառ թուրքերեն գրքերի մատենագիտություն. 1727–1968» (1985), «Հայատառ թուրքերէն գրքերի եւ հայատառ թուրքերէն պարբերական մամուլի մատենագիտութիւն (1727–1968)» (2005, քառալեզու), «Յուցակ հայերէն ձեռագրերի հայատառ թուրքերէն նիւթերի եւ հայատառ թուրքերէն ձեռագրերի» (2008) և մատենագիտ. այլ աշխ-ներ: ՀՀ նախագահի մրց. (2011):

ՍՏԵՓԱՆՅԱՆ Հարո Լևոնի (1897–1966), կոմպոզիտոր: ՀԽՍՀ ժող. արտիստ (1960): Հեղինակ է «Քաջ Նազար» (1934), «Սասունցի Դավիթ» (1936), «Լուսաբացին» (1938), «Հերոսուհի» (1950) և այլ օպերաների, սիմֆոնիաների (1944, 1945, 1953), «Լուր-դա-լուր» սիմֆ. պոեմի (1944), «Պարային սյուիտ»-ի (1951), Դաշնամուրի կոնցերտի (1959), ռապսոդիայի (1962), «Մեծ եղեռն» օրատորիայի (1964), լար. կվարտետների, գործիք. սոնատների, պիեսների, ռոմանսների և երգերի, գր. գործերի («Ղարղադիլը և ուրիշները», 1961, «Հին ծանոթներ», 1974, պատմվածքների ժող-ներ) ևն: ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ՍՏԵՓԱՆՅԱՆ Հովհաննես (Օնիկ) Կարապետի (1871–1930), դերասան: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1923): 1891-ից՝ Թիֆլիսի մշտ. թատերախմբի (Օթար բեկ, Ա. Յուժին-Սումբատովի «Դավաճանություն», Յագո՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», Կարլ Մոոր՝ Ֆ. Շիլլերի «Ավազակներ», ևն), 1922-ից՝ Հայաստանի Առաջին պետթատրոնի (Էլիզբարյան՝ Շիրվանզադեի «Պատվի համար», Օսիպ՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», ևն) դերասան:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Հովհաննես Սարգսի (1888–1962), աշխարհագետ, քարտեզագիր: Աշխ-ները վերաբերում են Հայաստանի աշխարհագրության պատմությանը և ֆիզիկաաշխարհագր. շրջանացման հարցերին: Հրատարակել է «ՀՍՍՀ աշխարհագրական անուններ» տեղեկատուն (1951), «Հայ քարտեզագրական հրատարակությունները 260 տարում» (1957) գիրքը: Հայկ. աշխարհագր. ընկ-յան հիմնադիրներից:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Հովհաննես Ստեփանի (1902–1950), երկրաբան: Երկրբ-հնքբ. գիտ. դ-ր (1948), պրոֆ. (1950): 1930–35-ին՝ Զանգեզուրի պղնձամոլիբդեն. կոմբինատի գլխ. երկրաբան, միաժամանակ ղեկավարել է Հայաստանի հս. շրջանների երկրաբանահետախուզ. աշխ-ները: Աշխ-ները վերաբերում են հանրապետության պղնձահրաքար. և բազմամետաղ. հանքավայրերի շերտագրությանը, տեկտոնիկային և մագմատիզմին:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Հրանտ Հարությունի (1918–1980), նկարիչ: Ստեղծել է դիմանկարներ, թեմատիկ պատկերներ, բնանկարներ, նատյուրմորտներ («Գաղթականներ», 1949, «Գետակ Բյուրականում», 1956, «Վահագն Դավթյան», 1976, «Նատյուրմորտ: Հաց, ձուկ, սոխ», 1945, «Վիշտ», 1974, «Բելա», 1975, ևն):

ՍՏԵՓԱՆՅԱՆ Նելսոն Գևորգի (1913–1944), օդաչու, գվարդիայի փոխգնդ. (1944): ԽՄ հերոս (1942, 1945, հետմահու): Մասնակցել է Զապորոժիեի, Պոլտավայի, Օդեսայի, Կախովկայի, Նիկոլաևի, Լենինգրադի պաշտպ-յանը: 1944-ի ապրիլին իր գրոհ. ավիագնդով աչքի է ընկել հատկապես Սևաստոպոլի, Թեոդոսիայի, Սուդակի շրջանում մղված մարտերում: 1944-ի մայիսին մասնակցել է Ֆինն. ծովածոցում թշնամու ուժերի ոչնչացմանը: Զոհվել է Բալթիկ ծովում (այրվող օդանավով մխրճվել է թշնամու նավախմբի մեջ): Կատարել է 239 մարտ. թռիչք, խմբովին և անձամբ ջրասույզ արել 53 (անձամբ՝ 13) նավ, ոչնչացրել 80 տանկ, 600 ավտոմեքենա, 27 օդանավ: Ստացել է «Բալթիկայի մրրկահավ» պատվանունը:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Ներսիկ (Ներսես) Միքայելի (1898–1937), տնտեսագետ, պետ. և կուս. գործիչ: 1931-ից՝ Անդրկովկաս. կոմհամալսարանի ռեկտոր, պրոֆ. (1935): 1933–34-ին՝ ՀԽՍՀ լուսավորության ժողկոմ: Աշխ-ները վերաբերում են աշխ-ի բաժանման հարցերին: 1937-ին բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Նոնա Սուրենի (1932–2014), արվեստաբան: Արվեստագիտ. դ-ր (1987): Սուրեն ***Ստեփանյանի*** դուստրը: Կազմել է Լ. Ա. Դուռնովոյի «Ակնարկներ միջնադարյան Հայաստանի կերպարվեստի» (ռուս., 1979) ժող-ը: Հեղինակ է «Հայաստանի արվեստը: Պատմագեղարվեստական զարգացման ուրվագծերը» (ռուս., 1989–2007, համահեղ.) և այլ աշխ-ների: 2005-ի՝ Մոսկվայի գեղարվ-ի ակադ-ի ԳՀԻ-ում:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Նորայր Գևորգի (1889–1987), անասնաբույծ-ընտրասերումնաբան: Գղտ. գիտ. դ-ր (1968): ՀԽՍՀ վաստ. անասնաբույծ (1950): Աշխ-ները վերաբերում են Հայաստանում տավարաբուծության տոհմ. գործի կազմակերպման և տավարի՝ նոր՝ բուծարան. ցեղի ստացման խնդիրներին: Կովկաս. գորշ տավարի ցեղի համահեղինակներից է:

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի և «Պատվո նշան» շքանշաններ:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Պերճ Գառնիկի (1937–2013), հրտ., բանասեր: Գառնիկ ***Ստեփանյանի*** որդին, Արմեն ***Տեր-Ստեփանյանի*** եղբայրը: 1991–95-ին՝ ***«Լույս»*** հրտչ-յան, 1995–98-ին՝ ՀՀ պետ. հեռուստաընկ-յան գլխ., 1999–2013-ին՝ ***ԵՊՀ հրապարակչության*** տնօրեն:

ՀՀ «Միսկս Խորենացի» մեդալ (2012):

ՍՏԵՓԱՆՅԱՆ Զուլիետա Մկրտչի (ծ. 1951), դերասանուհի: ՀՀ վաստ. արտիստ (1991): 2004-ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի, 2010-ից (միաժամանակ)՝ ԵԿՊԹ-ի դերասանուհի (Շամիրամ՝ Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ», Աղուն՝ Հ. Մաթևոսյանի «Աշնան արև», Լեդի Միլֆորդ՝

Ֆ. Շիլլերի «Սեր և խարդավանք», Լեդի Մակբեթ՝ Վ. Շեքսպիրի «Լեդի Մակբեթ», Պամելլա՝ Ռ. Կունիի «Գիշերային խրախճանք», ևն): Նկարահանվել է «Անիծվածները», «Քայլ ձիով» (երկուսն էլ՝ գեղ.), «Երևան ջան», «Մեր գյուղը» (երկուսն էլ՝ հեռուստաֆիլմ) և այլ կինոնկարներում:

ՀԹԳՄ «Արտավազդ» մրց. (2017):

ՍՏԵՓԱՆՅԱՆ Ռուբեն Գերասիմի (1902–1984), դիրիժոր, կոմպոզիտոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1961): Ա. Տեր-Ղևոնդյանի «Անահիտ» (1940), Ա. Խաչատրյանի «Գայանե» (1947), Է. Խաղազորտյանի «Սոնա» (1957) բալետների, Յ. Գևորգյանի «Խարույկ» օպերայի (1959) առաջին բեմադրությունների ղեկ-ը: Հեղինակ է սիմֆ. երկերի, կամեր-գործիք. անսամբլների, խմբերգերի, ռոմանսների, երգերի:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Ստեփան (Պետրոսյան Հարություն, 1878–1905), ֆիդայի: 1903-ին պայքարել է ՀԱԵ իրավունքների վերականգնման համար, Գանձակում կազմակերպել է բողոքի ցույցերին, մասնակցել է հայ-թուրք. կռիվներին Շուշիում: Զոհվել է Զանգեզուրում:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Ստեփան, XX դ-ի սկզբի ճարտարագետ, առաջին բետոնախառնիչ մեքենայի գյուտարարն ԱՄՆ-ում: 1-ին մեքենան պատրաստել է 1916-ին, պատենտի հայտը հաստատվել է 1933-ին:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Ստեփան Բաբայի (1911–1999), Փառքի երեք աստիճանների շքանշանակիր (1944, 1944, 1945): ՀՄՊ-ի ժամանակ կռվել է 26-րդ տանկ. գնդի կազմում: Մասնակցել է Կուրսկի ճակատամարտին, Լենինգրադի, Պրահայի ազատագրմանը: Աչքի է ընկել Վիբորգի, Տալլինի, Կրակովի, Վերին Սիլեզիայի ազատագրման մարտերում:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Ստեփան Սմբատի (ծ. 1927), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1975), պրոֆ. (1980): Հեղինակ է «Հայաստանը իմպերիալիստական Գերմանիայի քաղաքականության մեջ (19-րդ դարի վերջ–20-րդ դարի սկիզբ)» (ռուս., 1975), «Թալեաթ փաշայի դատավարությունը» (ռուս., 1992), «Արմին Վեգները և Էռնստ Վեռները Հայոց ցեղասպանության մասին» (1996), «Յոհաննես Լեփսիուսը և Հայաստանը» (1998) և այլ աշխ-ների: Կազմել է «Գերմանական աղբյուրները հայերի ցեղասպանության մասին» (ռուս., 1991) փաստաթղթերի ժող-ը:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Սուրեն Լևոնի (1895–1971), քանդ., արվ-ի տեսաբան: ՀԽՍՀ ժող. նկարիչ (1950): Արմենակ *Ստեփանյանի* եղբայրը, Նոնա *Ստեփանյանի* հայրը: Հեղինակ է Խաչատուր Աբովյանի (1950, Երևան), Ստեփան Շահումյանի (1954, Ստեփանավան) և այլ հուշարձանների, «Տարագրոս» (1941), «Հովսեփ Օրբելի» (1945), «Կոմիտաս» (1960) և այլ դիմաքանդակների, «Երեխայի լոգանք» (1965) քանդակի և այլ գործեր: Հեղինակ է նաև դեկորատիվ զարդաքանդակների (Հայաստանի Կառավարության տան, 1926–41, մասամբ՝ ԵՕՔԹ-ի, 1926–53, ևն):

ՍՏԵՓԱՆՅԱՆ Սուրեն Շավարշի (1915–1977), նկարիչ: ՀԽՍՀ վաստ. նկարիչ (1961): 1943–46-ին՝ Լենինականի և Երևանի տիկնիկ. թատրոնների ձևավորող նկարիչ: Ստեղծել է գեղանկարներ («Հին Լենինական», 1958, «Իմ հեքիաթը», 1959), քանդակներ («Երգ», 1969, «Սեղա», 1970, երկուսն էլ՝ փայտ), «Նկարիչ Ռ. Շիշմանյանի դիմանկարը» (1960), գրաֆիկ. թերթեր («Աշուն», 1975, ևն), ընկեր. շարժեր: Նկարազարդել և ձևավորել է շուրջ 300 գիրք:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Վահե Վարդանի (ծ. 1948), իրավաբան: Իրավաբ. գիտ. դ-ր (1988), պրոֆ. (2004): Որակավորման բարձրագույն դասի դատավոր (1996): ՀՀ Արդարադատության նախարար (1990–96), ՍԴ նախագահի տեղակալ (1996–97): Աշխ-ները վերաբերում են իրավունքի կազմավորման և իրավաստեղծ գործունեության տես. ու մեթոդաբան. խնդիրներին, սահմանադր. վերահսկողության հիմնահարցերին ևն:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Վարդուշ Խաչատուրի (1901–1987), դերասանուհի: ՀԽՍՀ ժող. արտիստ (1962): 1928–30-ին՝ Լենինականի դրամատիկ., 1930-ից՝ Հայաստանի Առաջին պետ. թատրոնների դերասանուհի (Քեթևան՝ Գ. Սունդուկյանի «Խաթաբալա», Քսենյա՝ Մ. Գորկու «Եգոր Բուլըչովը և ուրիշները», Հոռոմսիմ՝ Վ. Փափազյանի «Ժայռ», ևն):

ՍՏԵՓԱՆՅԱՆ Վիգեն Բորիսի (ծ. 1952), դերասան, ռեժ.: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2017): 1973–89-ին՝ ԵՌԹ, Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասան: 1989-ին հիմնադրել է «Արձագանք» թատրոն-ստուդիան, որի հիմքի վրա 1991-ին՝ «Մետրո» թատրոնը (մինչև 1994-ը՝ հիմնադիր-գեղ. ղեկ. և տնօրեն, 2003-ից՝ գեղ. ղեկ.): 2007–14-ին՝ Համազգ. թատրոնի ռեժ.: Դերերից են՝ Սատին (Մ. Գորկու «Հատակում»), Մարմարով (Գ. Սունդուկյանի «Քանդած օջախ»), Դունկա, Լիր Արքա (Վ. Շեքսպիրի «Մակբեթ», «Լիր արքա») ևն: Նկարահանվել է «Երկունք», «Երջանկության մեխանիկա», «Ինչպես էր կատուն արհեստ սովորում» (մանկ. մյուզիքլ), «Խաչմերուկի դեղատունը», «Պոլինա Սուրոտինայի հասուն կյանքը» (Մոսֆիլմ) և այլ ֆիլմերում: Բեմադրել է ավելի քան 40 ներկայացում: Հեղինակ է պիեսների (20-ից ավելին՝ բեմ.):

ՀԹԳՄ «Արտավազդ» (2007, 2013, 2015), Միջազգ. կփ (2016, Յալթա) մրց-ներ, Երևանի քաղաքապետի (2014), ՀԹԳՄ (2017) ոսկե մեդալներ:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Յոլյակ Ալեքսանդրի (1911–2002), փիլ.: ՌԳԱ թղթ. անդամ (1964): Աշխ-ները վերաբերում են գիտ. կոմունիզմի տեսության հարցերին:

ՍՏԵՓԱՆՅԱՆՑ Մարիետտա Տիգրանի (ծ. 1935), փիլ.: Փիլ. գիտ. դ-ր (1974), պրոֆ. (1983): ՌԴ գիտ. վաստ. գործիչ (2002): Աշխ-ները վերաբերում են Արևելքի երկրների փիլ. և հաս. մտքի հարցերին, համեմատ. փիլ-յանը: Հեղ. «Սարասվատի սամանա» (1996), ՌԳԱ Վ. Գ. Պլեխանովանի անվ. (2006) մրց-ներ, Տաջիկստանի նախագահի «Աշրաֆ» շքանշան (2001):

«Փիլիսոփայության զարգացման համար» արծաթե մեդալ (2010):

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵՐԵՑ, Ստեփանոս քահանա Տերտերյան (1746–1813), պատմագիր: Իրանի Փերիայի հայ գաղութի հոգևոր գործակալ: «Հանգիստագիրք» ձեռագիր մատյանում (գրել է 1787–89-ին) շարադրել է 1665–1789-ի Իրանի և հայ գաղութի, մասնավորապես՝ Փերիայի, Նոր Ջուղայի, Բուրվառի պատմությունը: Ս. Ե. թողել է նաև հանելուկներ, խրատ. և այլ բնույթի բանաստեղծություններ, արձակ գործեր: Ձեռագրերը պահվում են Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքում:

ՍՏԵՓԱՆՈՍ, VII դ-ի նկարիչ: Արուճում (այժմ՝ Արագածոտնի մարզում) 666-ին որմնանկարազարդել է իշխան Գրիգոր Մամիկոնյանի կառուցած Սբ Գրիգոր տաճարը: Որմնանկարներից պահպանվել են Ավագ խորանը երիզող զարդագոտին, նաև հս. պատին՝ 6 առաքյալների պատկերները, գմբեթարդում՝ Քրիստոսի (մոտ 7 *մ* բարձր.) պատկերի ստորին մասը (ներքևում նկարչի մակագրությունն է):

ՍՏԵՓԱՆՈՍ, XII դ-ի տոմարագետ: Մնդ-ում է նրա կազմած հայկ. մի նոր տոմարի բացատրություն (ձեռ. № 4617): Իսկ № 1973 ձեռագրում կա այդ տոմարով հաշված բոլորակ. տրված են 19 տարիների համար տարվա վերադիրը, Լուսնի զատկ. լրումը, եկեղեց. որոշ տոներ: Ս-ի տոմարը *Հայոց Փոքր թվականի* նման սկիզբ է առնում 1085-ից: Տոմարն անշարժ է, նահանջ տարվա լրացուցիչ մեկ օրն ավելացվում է *Ավելյաց* ամսվա վերջին:

ՍՏԵՓԱՆՈՍ (որդի Ահարոնի), XIII դ-ի բժիշկ: Ապրել է Կիպրոս կղզում: Հայ հեղինակների բժշկ. աշխ-ներից և արաբ հեղինակների թարգմ-յունների հիման վրա կիլիկյան հայ-ով գրել է «Ծաղիկ» աշխ-ը, որտեղ նկարագրել է ժամանակի բժշկությանը հայտնի հիվանդությունների ախտաբանությունը: Ս-ի աշխ-ներից մեջբերումներ է արել *Ամիրդովլաթ Ամասիացին*:

ՍՏԵՓԱՆՈՍ, XIII դ-ի վերջ–XIV դ-ի սկզբի գրիչ, մանրանկարիչ: *Վասպուրականի մանրանկարչության դպրոցի* ներկայացուցիչ: Ստեղծագործել է Բզնունյանց գվռ-ի Արճեշ ք-ում, աշակերտել ծաղկող և դպիր Խաչատուր քհն-ին: Ս-ի 2 ձեռագիր Ավետարաններ (1292-ի՝ ձեռ. № 6387, 1303-ի՝ ձեռ. № 4052) պահվում են Մնդ-ում: Առավել ամբողջական է 1303-ի ձեռագիրը: Նկարների թեմատիկ շարքն ու պատկերագրությունն առնչվում են X–XI դդ-ի մանրանկարչ. ավանդույթներին:

ՍՏԵՓԱՆՈՍ Ա ԴՎՆԵՑԻ (ծ. թ. անհտ–790), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 788-ից: Հայրապետ. գործունեության մասին գրեթե ոչինչ չի ավանդվել:

ՍՏԵՓԱՆՈՍ Ա ՂԱՎԱՂՆԻ, Ստեփանոս Բ Աղամի Զաքարյան (1777–1853), Կ. Պոլսի հայոց պատրիարք՝ 1831–39 և 1840–41-ին: Նրա օրոք բացվել են Ազգ. հիվանդանոցը (Կ. Պոլիս, 1834), Սկյուտարի ճեմարանը (1838) և 3 վարժարան: Կառուցվել է 3 եկեղեցի, նորոգվել՝ 16-ը: Լույս է տեսել (1832) Կ. Պոլսի հայ. առաջին թերթը՝ «Լրո գիրը»: Ս. Ա. սատարել է Արմաշի վանքի վարժարանի գործունեությանը:

ՍՏԵՓԱՆՈՍ Բ ՌՇՏՈՒՆԵՑԻ, Ստեփանոս Բ Ռշտունեցի (ծ. թ. անհտ–930), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 929-ից: Եղել է Վասպուրականի եպս-ներից:

ՍՏԵՓԱՆՈՍ Գ ՍԵՎԱՆՑԻ (ծ. թ. անհտ–972), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 969-ից: *Վահան Ա Սյունեցու* հետ գահակալ. պայքարի հետևանքով բանտարկվել է Կոտորոց բերդում (Վասպուրականի Անձախիձոր գվռ), որտեղ և վախճանվել է:

ՍՏԵՓԱՆՈՍ ԳՈՒՆԵՐԵՑԻ, XIII դ-ի 2-րդ կես–XIV դ-ի սկզբի գրիչ: Աշակերտել է *Գևորգ Սկևռացուն*, ընդօրինակել նրա «Խրատ յաղագս գրչութեան արուեստի» երկը, նաև Աստվածաշունչ (1285–88, որտեղ պահպանվել է Ս. Գ-ի առաջին թվակիր հիշատակարանը, 1297), Ժողովածու (1292, Մնդ., ձեռ. № 179), Ավետարան

(1290, 1292, 1307), Գործք առաքելոց (1310) ևն: Ս. Գ–ի ընդօրինակած ձեռագրերը հետագայում ծառայել են որպես ընտիր նախօրինակներ:

ՍՏԵՓԱՆՈՍ Դ ՀՌՈՄԿԼԱՅԵՑԻ (ծ. թ. անհտ–1293), Հայոց կաթողիկոս՝ 1290–ից: 1292–ին Հռոմկլան գրաված Եգիպտոսի զորքերը Ս. Դ Հ–ուն գերել, տարել են Կաիիրե, որտեղ բանտում մահացել է:

ՍՏԵՓԱՆՈՍ ԴԱՇՏԵՑԻ (1653–մ. թ. անհտ), բանաստեղծ, հանելուկագիր, ժամանակագիր, հրապարակախոս: Հեղինակ է աշխարհիկ բովանդակությամբ 22 հանելուկի, «Կարգ թագաւորաց հնդկաց» (մոտ 1719, Մտնդ., ձեռ. № 1786) ժամանակագրության, որտեղ արժեքավոր տեղեկություններ կան XVIII դ–ի սկզբի Հնդկաստանի քաղ. անցուդարձի մասին, «Մախաղ փշրանաց» (1700, Մտնդ., ձեռ. № 9689), «Խնդիր ուղղութեան» (1706, Մտնդ., ձեռ. № 673), «Կոչնակ ճշմարտութեան» (1714–15, պահպանվել է իրարից էապես տարբեր 2 օրինակով, Մտնդ., ձեռ. № 8111, 9049) դավանաբան–հրապարակախոս. երկերի:

ՍՏԵՓԱՆՈՍ Ե ՍԱԼՄԱՍՏԵՑԻ (ծ. թ. անհտ–1567), Հայոց կաթողիկոս՝ 1545–ից: Մեկնել է Հովհաննեսի Ավետարանը, գրել Քրիստոսի և ավետարանիչների վարքը, տաղեր և այլ գործեր: Հռչակվել է «քաջ րաբունապետ»: Արլ. Հայաստանը պարսկ. տիրապետությունից ազատագրելու հարցը քննարկելու նպատակով 1547–ին Էջմիածնում հրավիրել է գաղտնի խորհրդաժողով (տես *Էջմիածնի ժողովներ 1547, 1677*): Նույն թվականին գլխավորել է Արլ. Հայաստանի մելիքների հանձնարար. նամակներով Եվրոպա մեկնող պատվիրակությունը. աջակցություն ստանալու ակնկալությամբ բանակցություններ է վարել Վենետիկի հանրապետության դոժի (1548), Հռոմի Պողոս III և Հուլիոս III պապերի (1549–50), Հռոմ. սրբազան կայսրության կայսր Կառլ V–ի (1550) և Լեհաստանի թագավոր Սիգիզմունդ II Ավգուստի (1551) հետ:

ՍՏԵՓԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ, XIII դ–ի ժամանակագիր: Հավանաբար եղել է Սյունիքի Նորավանքի եպս–ը: Շարունակել է Սամվել Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» ժամանակագր. երկը՝ շարադրելով մոտ 100 տարվա (1193–1290) պատմ. իրադարձություններ: Կարևոր տեղեկություններ է տվել Հայաստանի, Կիլիկիայի, Վրաստանի քաղ. իրավիճակի, Զաքարյանների մղած ազատագր. պատերազմների, մոնղ. և մամլուքյան նվաճումների վերաբերյալ:

Ս. Ե–ի երկը նախկինում սխալմամբ վերագրվել է *Սյունեցի Օրբելյանին* և հրատարակվել նրա անունով («Ժամանակագրութիւն», 1942):

ՍՏԵՓԱՆՈՍ ԹՈՒԽԱՔԹՑԻ (1558–մոտ 1630), բանաստեղծ–տաղասաց, գրիչ: Հեղինակ է «Գովասանութիւն Կաֆայու քահանայից վերայ», «Ոտանաւորս եւ գանկատս լվանուն ու ճանճերուն ի Ստեփանոս Թոխաթցի երիցուէ ասացեալ» երգիծ., «Ողբ ի վերայ Եւդոկիա մեծի քաղաքին», «Ողբ վասն տղահասակ ննջեցելոց», «Տաղ ի Կաֆայ», «Ողբ ի վերայ վաղամեռիկ եղբօր իւրոյ Յակոբ քահանայի Եւդոկեացւոյ» բանաստեղծությունների: Ընդօրինակել է Շարակնոց, Սաղմոսարան, Քարոզգիրք, Գանձարան, Հայսմավուրք (պահվում են Երևանի, Վենետիկի, Երուսաղեմի և այլ մտնդ–ներում):

ՍՏԵՓԱՆՈՍ ԼԵՀԱՑԻ, Լվովցի, Իլովացի (ծ. թ. անհտ–1689), թարգմանիչ, փիլ., աստվածաբան: Հեղինակ է «Երգ ոտանաւոր առ Յիսուս Քրիստոս արարեալ սրբոյն Բեռնարտոսի» չափածո ստեղծագործության, «Բանք իմաստասիրականք եւ աստուածաբանականք...» փիլ. ծավալուն բառարանի (մինչև 1662–ը, Մտնդ., ձեռ. № 110), որտեղ ներկայացված են ժամանակի փիլ., աստվածաբան., հաս–քաղ., գեղագիտ., բարոյագիտ. առավել կարևոր կատեգորիաներն ու հասկացությունները՝ տարբեր աղբյուրներից քաղած բացատրություններով: Թարգմանել է *«Հայելի վարուց»* (XV դ.) բարոյախրատ. գրույցների ժող–ը (լեհ–ից, 1651, հրտ.՝ 1702), Հովսեպոս Փլավիոսի, Կեղծ Դիոնիսիոս Արեոպագացու աշխ–ներից, 11 Թղթեր, Արիստոտելի «Մետաֆիզիկա» երկը (լատ–ից, մինչև 1675–ը), որը նաև 2 անգամ մեկնել է, և այլ գործեր:

ՍՏԵՓԱՆՈՍ ՄԱՆՈՒԿ ԿԱՐՄԻՐՎԱՆԵՑԻ, XII դ–ի հոգևոր և մշակութ. գործիչ, Քեսունի մերձակա Կարմիր վանքի վանահայր: 18 տարեկանում ձեռնադրվել է վրդ. (այստեղից էլ՝ Սանուկ մականունը): Ս. Մ. Կ. եղել է *Գրիգոր Բ Վկայասերի* հետևորդներից: Վերջինիս մահից (1105) հետո նոր կաթողիկոս *Բարսեղ Ա Անեցին* նրան ձեռնադրել է եպս. և նրա ցուցումով ստանձնել Գրիգոր Բ Վկայասերի երկու ազգական–սաների՝ Գրիգոր և Ներսես եղբայրների (հետագայում՝ Ամենայն հայոց կաթողիկոսներ *Գրիգոր Գ Պահլավունի* և *Ներսես Շնորհալի*) դաստիարակության գործը: Ս. Մ. Կ–ու սաներն են եղել նաև նշանավոր մեկնիչներ Իգնատիոսը, Սարգիսը, Բարսեղը:

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱ ՎԱՆՔ, Մաղարդավանք, Դարաշամբի վանք, XVII դ–ի ճարտ. համալիր Իրանի հս–ում՝ Արաքս գետի ափին՝ Ջուղայից 15 *կմ* արմ.: 1643–55–ին խարխլված վանքի տեղում վանահայր Հակոբ Ջուղայեցին կառուցել է նոր եկեղեցի: Համալիրի շինքերը խմբավորված են 2 բակերի շուրջը, որոնցից հս–ում Սբ Ստեփանոս եկեղեցին է՝ կից եռաստիճան զանգակատնով, և Սբ Պողոս–Պետրոս թաղածածկ եկեղեցին, իսկ հվ–ում՝ պուրակին կից՝ բնակելի և օժանդակ երկհարկ շինությունները:

ՍՏԵՓԱՆՈՍ ՌՈՇՔԱ Ստեփանոսի (Ռոշքյան, Ստեփանյան, 1670–1739), բառարանագիր, եկեղեց., հոգևոր և մշակույթի գործիչ: Եպս. (1713): 1715–ից՝ լեհահայ թեմի առաջնորդ. փոխանորդ: Հեղինակ է «Փիլիսոփայութեան գիրք» (2–րդ մասը՝ «Տրամաբանութիւն»), «Սաշտոց հայոց», «Քերականութիւն» (1718), «Բարոյական աստուածաբանութիւն» (հ. 1–2, 1725), «Ժամանակագրութիւն կամ Տարեկանք եկեղեցականք» (1739, հայ. հրտ.՝ 1964), «Կենսագրութիւն հայոց եպիսկոպոսաց ի Լեհս» և այլ աշխ–ների, «Գանձ հայոց լեզուի կամ Բառարան Ստեփանեան» անտիպ արժեքավոր երկի:

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԵԲԱՍՏԱՑԻ (ծ. թ. անհտ–1387), նոր վկա, Սեբաստիա ք–ի Սբ Նշան եկեղեցու վանահայր, արք.: Մահմեդականները նրա մասին չարախոսել են իբր Սեբաստիա ք–ի սելջուկ տիրակալ Բուրհանեդդինի սուլթանի դեմ ծագած ապստամբությանը մասնակցելու համար: Երկու աբեղաների՝ Սեղբեստրոսի և Թորոսի հետ ներկայացել է Բուրհանեդդինին, որը պահանջել է, որ նրանք ուրանան Քրիստոսին: Մերժելով առաջարկը՝ երեքն էլ գլխատվել են:

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԿԵՎՌԱՑԻ, XIII դ–ի գրիչ: Սկևռայում Կիլիկյան թագավոր. տան անդամների՝ Կեռան թագուհու, Հեթում արքայորդու և ուր. պատվերով ընդօրինակել է 10–ից ավելի ձեռագրեր, որոնցից 5–ը՝ Երևանի, 1–ը Երուսաղեմի (1272, ձեռ. №1654) մտնդ–ներում են:

ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑԻ Առաջին, V դ–ի բանաստեղծ–երաժիշտ, եպս.: Պահպանվել են նրա 80 հնագույն երգերը (8 շարքով), որոնք կոչվում են «Հարութեան աւագ օրհնութիւններ»: Ս. Ս. ստեղծագործաբար է կիրառել իր ուսուցիչների երաժշտարանաստեղծ. արվ–ի լավագույն ավանդույթները: Որոշ հետազոտողներ Ս. Ս. Առաջինին նույնացնում են *Սյունեցի Երկրորդի* հետ:

ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑԻ, **Ստեփանոս Քերթող Երկրորդ** (660/670–735), մատենագիր, աստվածաբան, քերական, թարգմանիչ, բանաստեղծ, երաժիշտ, եպս.: Նրա անվան հետ է կապված Հայաստանում կանոնի ժանրի վավերացումը, ութձայնի նոր ուսմունքի հաստատումը, հոգևոր երաժշտությունը խազերով գրառելու նախն. արվ–ի սկզբնավորումը: Հեղինակ է աստվածաբան. բնույթի պատասխան թղթերի, մեկնությունների («Պիտանի լուծմունք Սահմանացն եւ Պորփիւրին», «Մեկնութիւն քերականին»), ճառերի, շարականների, սաղմոսների ևն: Որոշ հետազոտողներ Ս. Ս. Երկրորդին նույնացնում են *Սյունեցի Առաջինի* հետ:

ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՀԿԱՑԻ, XIII դ–ի գրիչ, մանրանկարիչ: Ստեղծագործել է Կիլիկյան Հայաստանում, ուսանել *Հովհաննես Արքաեղբոր* դպրոցում: Ս. Վ–ու անունն առաջին անգամ հիշատակվում է 1263–66–ին՝ նրա ընդօրինակած «Մաւունք Աստուածաշնչի» հիշատակարանում (Մտնդ., ձեռ. № 4243):1274–ին ընդօրինակել է ժամագիրք և նկարազարդել մի Ավետարան, 1275–ին լրացրել է Դավիթ քհն–ի Ավետարանը (Մտնդ., ձեռ. № 7534), 1280–ին Սսում՝ մեկ այլ Ավետարան, 1285–ին՝ Վարդան Արևելցու «Մեկնութիւն սաղմոսաց» աշխ–ը: Վերջին տեղեկությունն իր մասին 1289–ին է՝ Հովհաննես Արքաեղբոր և 2 այլ գրիչների ընդօրինակած ժող–ի հիշատակարանում (Մտնդ., ձեռ. № 3710):

ՍՏԵՓԱՆՈՍ ՏԱՐՈՆԵՑԻ, **Ստեփանոս Ասողիկ**, X դ–ի 2–րդ և XI դ–ի 1–ին կեսերի պատմագիր: Ասողիկ պատվանվանն արժանացել է հավանաբար հմուտ երգասաց լինելու համար: Գրել է «Պատմութիւն տիեզերական» [հրատարակել է Կարապետ Շահնազարյանցը Փարիզում (1859), ապա Ս. Մալխասյանցի առաջաբանով և ծնթգր–ներով լույս է տեսել Պետերբուրգում (1885), հրատարակվել է նաև ռուս. (թարգմ.՝ Մ. Էմինի, 1864), գերմ. (թարգմ.՝ Հ. Գելցերի, 1907), ֆրանս. (թարգմ.՝ Է. Դյուլորիեի, 1883)] երկը, որտեղ Հայաստանի և հայ ժողդ–ի պատմությունը ներկայացրել է հարևան երկրների ու ժողդ–ների պատմությանը միահյուսված: Այն կարևոր սկզբնաղբյուր է նաև Բյուզ. կայսրության, Արաբ. խալիֆության, Աբխազիայի, Վրաստանի և այլ երկրների պատմության ուսումնասիրության համար: Արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև հայ գրչության ու մշակութ. այլ կենտրոնների, կառույցների, գիտնականների ու արվեստագետների

մասին, հանգամանորեն ներկայացնում Տրդատ ճարտ–ի շինն. գործունեությունը:

ՍՏԵՓԱՆՈՍ ՏԵՐ–ՀՈՒՍԿԱՆՈՐԴԻ (ծ. թ. անհտ–1251), գրիչ, հոգևոր և մշակույթի գործիչ: Վրդ.: Եղել է Արգելանի Սբ Աստվածածնին վանքի վանահայրը: Նրա վարքը մահից հետո ներառվել է Հայսմավուրքի մեջ: Աշխ–ներից հայտնի են «Պատմութիւն երկրորդ գալստեանն Քրիստոսի»–ն և «Խրատ հաւատացելոց»–ը (Մտնդ., ձեռ. № 1520, 2190, 3070): Ս. Տ–Հ–ու գերեզմանը դարձել է ուխտատեղի, որի վրա հետագայում կառուցվել է Բերկրիի Սբ Ստեփանոս կամ Տեր–Հուսկանորդի վանքը:

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ (ծ. թ. անհտ–1305), պատմիչ, Սյունիքի մետրոպոլիտ՝ 1286–ից՝ *Օրբելյանների* իշխան. տոհմից: Ս. Օ. միավորել է Տաթևի ու Նորավանքի առաջնորդարանները, նյութ. մեծ օգնություն է ցույց տվել գրչության կենտրոններին: 1297–ին ավարտել է Տաթևի վանքի վերանորոգումը, նպաստել է Գլաձորի համալսարանի ստեղծմանն ու բարգավաճմանը: Գումարել է եկեղեց ժողով, որը մերժել է հռոմ. դավանանք ընդունելու *Գրիգոր Է Մնավարզեցու* պահանջը:

Ս. Օ–ի «Պատմութիւն նահանգին Սիսական» [հրատարակել է Կարապետ Շահնազարյանը 1859–ին Փարիզում, Մկրտիչ Էմինը՝ 1861–ին Մոսկվայում, տպագրվել է նաև ֆրանս. (թարգմ.՝ Մ. Բրոսսեի, հ. 1, 2, 1864, 1866), հատվածաբար՝ ռուս. և վրաց.] աշխ–յան բուն նյութը, ժամանակագր. առումով, ընդգրկում է Հայոց թագավոր Տրդատ Ա–ից մինչև XIII դ–ի վերջի իրադարձությունները: Շարադրված են Սյունյաց նախ–յան առաջացման, Արշակունյաց և մարզպան. Հայաստանում նրա խաղացած դերի, Սյունյաց թագավորության և հայ Օրբել–յանների իշխանության պատմությունը: Երկը հարուստ նյութ է բովանդակում Կիլիկյան և մայր Հայաստանի, մոնղ. արշավանքների ու մոնղոլների պատմության, Այսրկովկասի (հատկապես՝ Վրաստանի) պատմության վերաբերյալ: Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից» հետո Ս. Օ–ի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկը երկրորդն է, որտեղ փորձ է արվել պատմ. նյութը ներկայացնել գիտ. շարադրանքով:

1302–ին Ս. Օ. գրել է «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» դավանաբան. երկը: «Ողբ ի Ս. Կաթուղիկէն» բանաստեղծության մեջ ողբում է հայկ. պետականության կորուստը:

ՍՏԵՔԻՈՄԵՏՐԻԱ (< հուն. stoixeion – տարր և metreo – չափություն), տես *Տարրաչափություն*:

ՍՏԵՖԱՆ (Stefan) Յոզեֆ (1835–1893), ավստրիացի ֆիզիկոս: Փորձով հաստատել է (1879) բացարձակ սև մարմնի ճառագայթման օրենքը՝ *Ստեֆան–Բոլցմանի օրենք*: Աշխ–ները վերաբերում են գազերի ջերմահաղորդականությանը և դիֆուզիային, օպտիկային ևն:

ՍՏԵՖԱՆ ԴՈՒՇԱՆ (մոտ 1308–1355), Սերբիայի թագավոր՝ 1331–ից՝ Նեմանիչների հարստությունից: Վերամիավորել է Մակեդոնիան, Ալբանիան (1345), Էպիրոսը և Թեսալիան (1348): Ստեղծել է սերբահուն. թագավորություն: 1345–ի վերջին սերբ. արքեպիսկոպոսությունը հռչակել է պատրիարքություն: 1349–ին հրատարակել է օրենքների ժող. (այսպես կոչված՝ Ստեֆան Դուշանի օրինագիրը):

ՍՏԵՖԱՆ ԼԱԶԱՐԵՎԻՉ (մոտ 1377–1427), սերբ իշխան՝ 1389–ից՝ Նեմանիչների հարստությունից: Սերբիայի բռնակալ (1402–ից): Օսմ. էքսպանսիայի դեմ պայքարում ճանաչել է հունգ. հովանավորությունը Սերբիայի հանդեպ, հասել է Հունգ. թագավորությունից Բելգրադի զիջմանը, այն դարձրել է երկրի մայրաքաղաք: Սրբադասվել է:

ՍՏԵՖԱՆ ՆԵՄԱՆՅԱ (1113/14–1200), մեծ ժուպան (մոտ 1170–96), Սերբ. պետության և Նեմանիչների հարստության հիմնադիրը: Նրա ջանքերով Բյուզանդիան ճանաչել է (1190) Սերբ. պետության անկախությունը: 1196–ից՝ վանական: Սրբադասվել է:

ՍՏԵՖԱՆ–ԲՈԼՑՄԱՆԻ ՕՐԵՆՔ ճառագայթման, հաստատում է բացարձակ սև մարմնի լրիվ (ճառագայթման բոլոր հաճախականություններով) առաքման ունակության կախումը բացարձակ ջերմաստիճանից՝ T· $u = \delta T^4$, որտեղ $\delta = 5{,}67 \cdot 10^{-8}$ *Վտ·մ*$^{-2}$ · K^{-4} **Ստեֆան–Բոլցմանի հաստատունն** է: Բացահայտել է Յ. *Սթեֆանը* (1879), փորձով հիմնավորել՝ Լ. *Բոլցմանը* (1884):

ՍՏԵՖԱՆՈՊՈՒԼՈՍ Կոնստանտինոս (1926–2016), Հունաստանի նախագահ՝ 1995–2005–ին: Դեմոկրատ. բարեփոխումներ կուս–յան հիմնադիր–նախագահը (1985–94):

ՍՏԵՖԱՆՈՎՄԿԻ Պյոտր Միխայլովիչ (1903–1976), խորհրդ. փորձարկող օդաչու, ավիացիայի գեն–մայոր (1944): ԽՄ հերոս (1948): Փորձարկել է մի շարք փորձն. ինքնաթիռներ. այդ թվում՝ վայրասլաց Պե–2, հրթիռ. կործանիչներ Յակ–15 և ՄիԳ–19 (թռել է ավելի քան 300 տեսակի ինքնաթիռներով):

ՍՏԵՖԱՆՍՈՆ (Stefansson) Վիլյալմուր (1879–1962), կանադացի բևեռախույզ, ազգագրագետ, գրող: 1904–12–ին ղեկավարել է Արկտիկ. 3 արշավախումբ: 1913–18–ին հետազոտել է Բանկս, Պրինց Արքայազն Պատրիկ թ–կղզիները: Թագավոր. աշխարհագր. ընկ–յան մրց. (1921):

ՍՏԻԳՄԱ (հուն.՝ stigma – ծակոց, բիծ), 1. շնչաճեղք, որոշ հողվածոտանիների շնչառ. օրգանի բացվածքը մարմնի մակերևույթին: 2. Խոիկաճեղք ասցիդիաների ըմպանում: 3. Լուսազգաց աչիկ կամ աչքաբիծ՝ գունավորված միաբջիջ օրգանիզմներում: 4. Հին Հունաստանում՝ նշան կամ խարանադրոշմ ստրուկի կամ հանցագործի մարմնի վրա:

ՍՏԻԼԲ (հուն.՝ stilbo – փայլել, փայլատակել), պայծառության միավորը միավորների ՍԳՎ համակարգում: Նշանակումը՝ *Սբ*: *Սբ* = 10^4 *Կդ/մ*^{2} ≈ 3,14 · 10^4 *ապոստիլբ* ≈3,14 *լամբերտ*:


ՍՏԻԼԻՔՈՆ (Stilicho) Փլավիոս (մոտ 360–408), Հռոմի պետ. և զինվ. գործիչ (ծագումով՝ վանդալ): Իրրև կայսր *Թեոդոսիոս I Մեծի* դեսպան՝ գործուն մասնակցություն է ունեցել Հայաստանի առաջին բաժանման (387) վերաբերյալ Տիզբոնում տեղի ունեցած բանակցություններին: Նշանակվելով (395) մանկահասակ կայսր *Հոնորիոսի* խնամակալ՝ դարձել է Արևմտահռոմ. կայսրության փաստացի կառավարիչ: Քանիցս պարտության է մատնել բարբարոսներին: Սպանվել է Հոնորիոսի հրամանով:

ՍՏԻԼԼԵՐ (Stiller) Մորից (1883–1928), շվեդ կինոռեժ., դերասան: Շվեդ. կինեմատոգրաֆիայի հիմնադիրներից: Նկարահանել է «Պարոն Առնեի փողերը» (1919), «Սագա Իեստա Բեռլինգի մասին» (1924), «Դատվող կինը» (1927) և այլ ֆիլմեր:

ՍՏԻՇՈՎ Սերգեյ Միխայլովիչ (ծ. 1937), ռուս ֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (2008): ՌԳԱ բարձր ճնշումների ֆիզիկայի ինստ–ի տնօրեն (1993–ից): Աշխ–ները վերաբերում են բարձր ճնշումների ֆիզիկային, ֆազ. անցումներին: Ստացել և հետազոտել է սիլիկահողի նոր գերխիտ ձևափոխությունը (ստիշովիտ.):

ՌԳԱ Պ. Լ. Կապիցայի (2014), Պ. Բրիչմենի (2005) անվ. ոսկե մեդալներ:

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐ, մակածված ճառագայթում, առաջանում են համակարգում արտաքին պարբեր. ազդեցությունների ներգործությամբ (օր.՝ ճոճանակ. Ս. տ.՝ պարբեր. ուժի ազդեցությամբ, կամ տատանող. կոնտուրում՝ էլշուի պարբեր. ազդեցությամբ): Եթե ներգործության հաճախությունը համընկնում է համակարգի սեփ. տատանումների հաճախությանը՝ ω_0 (նկ.), առաջանում է ***ռեզոնանս***:



Ստիպողական տատանումներ. փարփանում–ների ամպլիտուդի (A) կախումն արտաքին ազդեցության հաճախականությունից (ω)՝ փարբեր մարումների դեպքում. 1. թույլ մարում, 2. ուժեղ մարում, 3. կրիտիկական մարում

ՍՏԻՐԼԻՆԳ (Stirling) Ջեյմս (1692–1770), շոտլանդացի մաթեմատիկոս: Աշխ–ները վերաբերում են շարքերի տեսությանը և վերջավոր տարբերությունների հաշվարկին: Ստացել է այսպես կոչված U–ի բանաձևը (1730), որն 1–ին n բնական թվերի արտադրյալի (ֆակտորիալի) մոտավոր արտահայտությունն է, երբ n–համաբազմապատկիչների թիվը մեծ է,

$$n! = \sqrt{2\pi n} \cdot n^n e^{-n},$$

որտեղ $\pi = 3{,}14159 \ldots$, $e = 2{,}71828$ (բնական լոգարիթմի հիմքը):

ՍՏԻՌԼԻՆԳԻ ՇԱՐԺԻՉ, արտաքին այրման շարժիչ, որտեղ բանող նյութը (հելիում կամ ջրածին) մշտապես գտնվում է փակ տարածքում և ծավալը փոխում է տաքացնելու ու սառեցնելու հաշվին: Ջերմությունն ստացվում է աշխ. ծավալից դուրս, օր.՝ քիմ. վառելանյութի այրումով: Ս. շ–ներն օգտագործում են նավային գեներատորներում, ջերմ. պոմպերում ևն: Ստեղծել է անգլիացի գյուտարար–քին. Ռ. Ստիրլինգը (1790–1878):

ՍՏԻՎԵՆՍ (Stevens) Սիակա Պրորին (1905–1988), Սիեռա Լեոնեի նախագահ՝ 1971–85–ին: 1960–85–ին՝ Համաժողովրդ. կոնգրես կուս–յան հիմնադիր–գլխ. քարտուղար, 1985–ից՝ կուս–յան ղեկ. խորհրդի նախագահ: 1967–71–ին (ընդմիջումներով)՝ վարչապետ:

ՍՏԻՎԵՆՍՈՆ (Stevenson) Թեոֆիլո (ծ. 1952), կուբացի բռնցքամարտիկ: Օլիմպ.

խաղերի (1972, 1976, 1980) և աշխարհի (1974, 1978, 1986) չեմպիոն՝ ծանր քաշում:

ՍՏԻՐԻԿՈՎԻՉ Միխայիլ Ադոլֆովիչ (1902–1995), ռուս. ջերմաէներգետիկ-ջերմաֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (1964): Սոց. աշխ. հերոս (1972): Աշակել է կաթսայաագրեգատների հաշվարկի նորմեր, հետազոտել երկֆազ հոսքերը, սահման. շերտը եռման ժամանակ, զանգվածափոխությունն ու ֆիզքիմ. շարժընթացները մագնիսահիդրոդինամիկ գեներատորներում:

ՍՏԻՐՈԼ, ֆենիլէթիլեն, վինիլբենզոլ, արոմատիկ անխաջրածին, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 145,2°C: Ստանում են էթիլբենզոլի դեհիդրմամբ: Կիրառվում է պոլիստիրոլ, ***բուտադիեն-ստիրոլային կաուչուկ***, իոնափոխանակային խեժեր ստանալու համար և որպես պոլիէսթեր. խեժերի բաղադրիչ:

ՍՏՅՈՐՄԵՐ, **Շտյորմեր** (Størmer), Ֆրեդերիկ Կառլ Մյուլերց (1874–1957), նորվեգացի երկրաֆիզիկոս և մաթեմատիկոս: ԽՍՀՄ ԳԱ արտ. պատվ. անդամ (1934): Առաջարկել է բևեռափայլերի տեսությունը, Երկրի մագնիս. դաշտում՝ տիեզ. ճառագայթների հետագծերի հաշվարկման եղանակ:

ՍՏՅՈՐՏ (Sturt) Չառլզ (1795–1869), Ավստրալիայի անգլիացի հետազոտող: 1829–30-ին հայտնագործել է Դաուլինգ գետը, հետազոտել Մուրեյ գետի ավազանը: 1844–46-ին առաջինն է հետազոտել Կենտր. Ավստրալիան:

ՍՏՅՈՐՏԵՎԱՆՏ (Sturtevant) Ալֆրեդ Հենրի (1891–1970), ամերիկացի գենետիկ, ժառանգականության քրոմոսոմ. տեսության ստեղծողներից: ԱՄՆ ԳԱԱ անդամ: Առաջինն է հիմնավորել քրոմոսոմներում գենների գծային դասավորության տեսությունը: Բացահայտել է սուպրեսիայի երևույթը (1920) և գենի դիրքի էֆեկտը (1925):

ՍՏՅՈՒԱՐՏ (Stuart) Ջոն Մակ-Դոուել (1815–1866), Ավստրալիայի շոտլանդացի հետազոտող: 1844–66-ին մասնակցել է Չ. ***Սթյորթի*** արշավախմբի աշխ-նեին: 1858–61-ին հետազոտել է Կենտր. Ավստրալիան, հայտնագործել Սակդոնել լ–շղթան: 1862-ին հատել է մայրցամաքը՝ հվ–հս.:

ՍՏՅՈՒԱՐՏՆԵՐ (Stuart, Stewart), թագավոր. հարստություն Շոտլանդիայում (1371–1714) և Անգլիայում (1603–49 և 1660–1714): Առավել հայտնի են ***Մարի Սթյուարտը***, Հակոբ I-ը (Շոտլանդիայում՝ Հակոբ VI), Կարլոս I-ը, Կարլոս II-ը, Հակոբ II-ը:

ՍՏՇԵԼԵՑԿԻ (Strzelecki) Պավել Էդմունդ (1797–1873), լեհ բևեռախույզ, երկրաբան և աշխարհագետ: Ճանապարհորդել է Հս. և Հվ. Ամերիկայով ու Օվկիանիայի կղզիներով: 1839–40-ին հետազոտել է Նոր Հվ. Ուելսը, ավստրալ. Ալպերը (հայտնագործել է ոսկու հանքավայր և Ավստրալիայի ամենաբարձր կետը՝ Կոսցյուշկո լ.), 1841–42-ին՝ Թասմանիան:

ՍՏՈԳՆԻ Անատոլի Ալեքսանդրովիչ (1932–2007), ուկրաինացի մաթեմատիկոս: Ուկր. ԽՍՀ (1976), ՌԳԱ (1984) թղթ. անդամ: Աշխ-ները վերաբերում են էՀՄ-ների մաթ. ապահովման, տվյալների ավտոմատ մշակման հարցերին:

ԽՍՀՄ Պետ. (1968), ՆԽ (1983) մրց-ներ:

ՍՏՈԻՅԶՄ (հուն.՝ stoa – սյունասրահ, սյունազարդ սրահ Աթենքում, որտեղ ուսուցանել է այդ ուսմունքի հիմնադիր ***Զենոն Կիտիոնացին***), անտիկ փիլ-յան ուղղություն: Անցել է զարգացման 3 շրջան՝ Հին Ստոյա (Զենոն Կիտիոնացի, Կլեանթես, Քրիսիպոս), Միջին Ստոյա (մ. թ. ա. II–I դդ., Պանետիոս, Պոսիդոնիոս), Ուշ Ստոյա (կամ Հռոմ. Ս., Սենեկա, ***Էպիկտետոս***, Մարկոս Ավրելիոս): Ս. վերածնել է ***Հերակլիտեսի*** ուսմունքը լոգոս-կրակի մասին. կյանքը կենդանի օրգանիզմ է, որը ներթափանցված է ստեղծագործ նախնական կրակով՝ ***պնևմայով***, որը ստեղծում է բոլոր իրերի տիեզ. «համակրանքը», ողջ գոյավորը մարմն. է և տարբերվում է մատերիայի կոպտության կամ նրբության աստիճանով, իրերն ու իրադարձությունները կրկնվում են յուրաքանչյուր պարբեր. բոցավառումից և տիեզերքի մաքրագործումից հետո: Բոլոր մարդիկ տիեզերքի՝ որպես համաշխ. պետության քաղաքացիներ են, հավասար (տեսականորեն)՝ համաշխ. օրենքի առջև: Ս-ի բարոյագիտ-յունը լայն կիրառություն է ունեցել միջին դարերում և Վերածննդի ժամանակաշրջանում:

ՍՏՈԼԲՈՒԻ, բույսերի հիվանդություն: Հարուցիչները վիրուսներն են (այլ տվյալներով՝ միկոպլազմաները): Ախտահարվում են մորմազգիները և մոլախոտերը: Կարճանում են տերևների չափերը, գույնը փոխվում է, պտուղները կոշտանում են:

ՍՏՈԼԵՏՈՎ Ալեքսանդր Գրիգորևիչ (1839–1896), ռուս. ֆիզիկոս: Ն. Գ. ***Սթոլետովի*** եղբայրը: Ստացել է երկաթի մագնիսացման կորը (1872), հետազոտել արտաքին լուսաէֆեկտը (1888–90), բացահայտել լուսաէֆեկտի 1-ին օրենքը: Մոսկվայի համալսարանի ֆիզիկայի լաբորատորիայի հիմնադիրը (1874), գիտ. դպրոցի ղեկ.:

ՍՏՈԼԵՏՈՎ Նիկոլայ Գրիգորևիչ (1834–1912), հետևազորի ռուս, գեն. (1898): Ա. Գ. ***Սթոլետովի*** եղբայրը: Հիմնադրել է Կրասնովոդսկ ք-ը, ղեկավարել Ամուդարյայի ռուս. գիտ. արշավախումբը: 1877–78-ի ռուս-թուրք. պատերազմում գլխավորել է բուլղ. աշխարհազորը, եղել Շիպկայի պաշտպ-յան ղեկ-ներից:

ՍՏՈԼԻՊԻՆ Պյոտր Արկադևիչ (1862–1911), ռուս պետ. գործիչ: Ռուսաստանի ՆԽ նախագահ՝ 1906-ից. որոշել է կառ-յան քաղ-յունը: 1906-ին հռչակել է սոցիալ-քաղ. բարեփոխումների կուրս: Սկսել է իր անունով կոչված ***ագրարային վերափոխումները***: Աշակել է տեղ. ինքնակառավարման բարեփոխման օրինագիծ, մտցրել է ընդհ. տարր. կրթություն, կրոնների հանդուրժողականություն: Նախաձեռնել է ռազմադաշտ. դատարանների ստեղծումը՝ հեղ. շարժման դեմ պայքարելու համար: 1907-ին ցրել է Պետ. 2-րդ դուման և անցկացրել նոր ընտր. օրենք՝ էականորեն ուժեղացնելով դումայում աջ կուս-յունների ներկայացուցիչների դիրքերը: Մահացու վիրավորել է ահաբեկիչը:

ՍՏՈԼՅԱՐՈՎ Նիկոլայ Գեորգևիչ (1922–1993), ռուս օդաչու: ԽՄ հերոս (1944, 1945), գնդ. (1975): ՀՄՊ-ի ժամանակ՝ գրոհային ավիացիայում սավառնակախմբի հրամ. և գնդի ղեկապետ. կատարել է 185-ից ավելի մարտ. թռիչք:

ՍՏՈԼՊԵՐ Ալեքսանդր Բորիսովիչ (1907–1979), ռուս. կինոռեժ., սցենարիստ: ԽՍՀՄ ժող. արտիստ (1977): Համահեղինակ է (Ն. Վ. Էկկո, Ռ. Վ. Յանուշկևիչ) «Կյանքի ուղեգիր» (1931) ֆիլմի սցենարի: Նկարահանել է «Պատմություն իսկական մարդու մասին» (1948), «Ողջեր և մեռածներ» (1964), «Հատուցում» (1969) և այլ կինոնկարներ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949, 1951):

ՍՏՈԽԱՍՏԻԿ ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ (լատ.՝ stochastic – պատահական), մաթ. գիտակարգ. ուսումնասիրում է երկրչփյան և հավանականության տեսության փոխառնչությունները: Զարգացել է դաս. ինտեգրալ. երկրչփ-յունից և երկրչփ. հավանականությունների մասին խնդիրներից՝ պատահական, հատկապես՝ կետային շարժընթացների տեսության եղանակների ու գաղափարների ներառումով:

ՍՏՈԽԱՍՏԻԿ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐ, ոչ կանոնավոր տատանումներ, որոնք արտաքուստ չեն տարբերվում աղմկային (պատահական շարժընթացների) տատանումներից՝ լիովին որոշարկված (առանց աղմուկների ու ֆլուկտուացիաների) ոչ գծային համակարգում: Աղմկային տատանումների նման բնութագրվում են ֆուրյեի հոծ սպեկտրով, բայց, ի տարբերություն նրանց, կարող են գեներացվել ազատության աստիճանների վերջավոր թվով դինամիկ. համակարգում:

ՍՏՈՇԱՆԻ, տես ***Կրծքաորովայնային միջնորմ***:

ՍՏՈԿՀՈԼՄ (Stockholm), ***Շվեդիայի*** մայրաքաղաքն ու համանուն լանի վարչ. կենտրոնը, նվինգստ Բալթիկ ծովի ափին: Բն.՝ 1,28 մլն, ագլոմերացիայում՝ 1,77 մլն (2010): Ունի օդանավակայան, մետրոպոլիտեն: Երկրի գլխ. տնտ. և մշակութ. կենտրոնն է: Կան թեթև, սննդի արդ-յան ձեռն-ներ, բարձր տեխնոլոգ. և կենսատեխնոլոգ. ոլորտի ընկ-ներ: Գործում են բազմաթիվ թատրոններ, թանգարաններ (Ազգ., Պատմության, Ճարտ-յան, ժամանակակից արվ-ների ևն) և բուհեր: 1-ին անգամ հիշատակվել է 1252-ին: XIII դ-ից եղել է թագավոր. նստավայր: 1523-ից անկախ Շվեդիայի մայրաքաղաքն է: Ճարտ. հուշարձաններից են ռոմանագոթ. ոճի Ստուրչյուրկա և Ռիդարհոմսչյուրկա եկեղեցիները (երկուսն էլ՝ XIII դ.), դաս. ոճի թագավոր. պալատը (XVII–XVIII դդ.), մեծաթիվ ազնվական. դղյակները XVII–XIX դդ.), Ռատուշան (1911–23): Ս-ում անցկացվել են V օլիմպ. խաղերը (1912): Անտառ. գերեզմանոցը Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

Ս-ում և արվարձաններում ապրում է շուրջ 2500 հայ: Գործում են «Արարատ» միությունը, Ս-ի եկեղեց. խորհուրդը, ՀՕՄ-ի՝ Ս-ի մասնաճյուղը: 1989–95-ին Հայ-շվեդ. մշակութ. կենտրոնն ունեցել է հայկ. ռադիոժամ:

ՍՏՈԿՀՈԼՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, հիմնադրվել է 1878-ին Շվեդիայում՝ որպես բնական գիտ-յունների քոլեջ: 1960-ից՝ համալսարան: 2015-ին ուներ շուրջ 55 հզ. ուսանող:

ՍՏՈԿՈՎՍԿԻ (Stokowski) Լեոպոլդ (1882–1977), լեհ դիրիժոր, երգեհոնահար: Երաժշտ. արվ-ում ամերիկ. ոճի ներկայացուցիչ: 1905-ից՝ ԱՄՆ-ում: «Համաամերիկյան երիտասարդական» սիմֆ. նվագախմբի հիմնադիրը (1940) և դիրիժորը: Ֆիլադելֆիայի, Հոլիվուդի (1945–49), Նյու Յորքի (1949–50) ֆիլհարմոնիկ, Լոնդոնի (1970–77) սիմֆ. և այլ նշանավոր նվագախմբերի դիրիժոր: Երկացանկում՝ ամերիկ. արդի կոմպոզիտորների երկերից:

ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱ (< հուն. stoma, սեռ. հոլ.՝ stomatos – բերան և ***...լոգիա***), կլինիկ.

բժշկագիտ–յան բնագավառ. ուսումնասիրում է ատամների, բերանի խոռոչի, ծնոտների և դեմք ու պարանոցի սահման. շրջանների հիվանդությունները: Ընդգրկում է թերապևտիկ., վիրաբուժ., օրթոպեդիկ. և մանկ. տարիքի Ս–ներ: Ս–ի զարգացումը ՀՀ–ում պայմանավորված է 1920–ական թթ–ին Ա. Մաշուրի նախաձեռնությամբ Հայաստանի ատամնաբույժների գիտագործն. խորհրդի և ատամնաբուժ. դասընթացների կազմակերպմամբ, հետագայում (1946)՝ Երևանի օրթոպեդիայի և վերականգնող. վիրաբուժության ԳՀԻ–ի (1946), Ստոմատոլոգների հանրապետ. գիտ. ընկ–յան (1847), ԵՊԲՀ ստոմատոլոգ. ֆակ–ի (1961) և բժիշկների կատարելագործման ինստ–ի Ս–ի ամբիոնների հիմնադրման հետ:

ՍՏՈՄՄԵԼ (Stommel) Հենրի Մելսոն (1920–1992), ամերիկացի օվկիանոսագետ: ՌԳԱ արտ. անդամ (1976): Աշխ–ները վերաբերում են օվկիանոս. շրջապտույտի տեսությանը, Ռոսաբիի ալիքներին, խոշորամասշտաբ մրրկայնությանը, առաջարկել է օվկիանոս. ջերմ. սեպի մոդել:

ՍՏՈՅԱՆՈՎ, Զախարի (1850/51–1889), բուլղար գրող, հաս. գործիչ: Ազգ–ազատագր. շարժման գործիչ: Ստարա Զագորայի (1875), Ապրիլյան (1876) և Արլ. Ռումելիայի (1885) ապստամբությունների կազմակերպիչ: Հեղինակ է հայդուկային և ազգ. ականավոր գործիչների մասին կենսագր. վեպերի («Վասիլ Լևսկի–Սարկավագ», 1883, «Հաջի Դիմիտր և Ստեփան Կարաջա», 1885, հայ.՝ 1890, «Խրիստո Բոտև», 1888, ևն), «Նոթեր բուլղարական ապստամբությունների մասին» (հ. 1–3, 1884–92) երկի: Հայ. հատարակվել են «Սարկավագ» (1890), «Պառավ Տոնկա» (1893) վեպերը:

ՍՏՈՅԱՆՈՎ, Լյուդմիլ (Գեորգի Զլատարով, 1886–1973), բուլղար գրող: Բուլղարիայի ԳԱ ակադ. (1946): ԲԺՀ Սոց. աշխ. հերոս (1963): Մշակույթի ժող. գործիչ (1963): Հեղինակ է «Ժանտախտ» (1935) և այլ վիպակների, «Արշալույսին» (1945), «Երկրային կյանք» (1939), «Երկաթե վարագույրի հետևում» (1953) բանաստեղծությունների, «Ճոճանակի ուղին» (1946) հոդվածների ժող–ների, «Մանկություն» (1962) ինքնակենսագր. վիպակի, նաև պիեսների, հրապարակախոս. գործերի:

ԲԺՀ Դիմիտրովյան մրց. (1950), «Գեորգի Դիմիտրովի» (3) և Աշխ. կարմիր դրոշի շքանշաններ:

ՍՏՈՅԱՆՈՎ, Պյոտր Ստեֆանով (ծ. 1952), Բուլղարիայի նախագահ՝ 1997–2002–ին: 1992–94–ին՝ արդարադատության նախարար: Բուլղարիայի դեմոկրատ. ուժերի միություն կուս–յան առաջնորդներից:

ՍՏՈՅԱՆՈՎ, Վասելին (1902–1969), բուլղար կոմպոզիտոր, դաշնակահար: ԲԺՀ ժող. արտիստ (1962): Սոց. աշխ. հերոս (1969): Բուլղ. կատակերգ. օպերայի հիմնադիրը («Կանանց թագավորություն», 1935): Հեղինակ է «Սալամբո» (1940) պատմ. օպերայի, «Բայ Գանյո» (1941) սիմֆ. սյուիտի, սիմֆոնիաների, կանտատների, լար. կվարտետների, երգերի և այլ գործերի:

ԲԺՀ Դիմիտրովյան մրց. (1951):

ՍՏՈՊՊԱ, (Stoppa) Պաոլո (1906–1988), իտալացի դերասան: Մարմնավորել է գլխ. կերպարներ, հիմնականում՝ կատակերգություններում: 1946–ին Ռ. *Մորելլիի* հետ հիմնադրել է թատերախումբ (խաղացել է մինչև 1960–ը), որտեղ աշխատել է նաև Լ. *Վիսկոնտին*: 1932–ից նկարահանվել է կինոյում («Նեապոլի ոսկին», «Ռոկկոն և նրա եղբայրները», «Ընձառյուծ» ևն):

ՍՏՈՐԱԿԱՐԳ ԲՈՒՅՍԵՐ, թալոմային բույսեր, բույսերի ենթաթագավորություն: Ս. բ–ի մարմինը (թալոմ) բաժանված չէ արմատի, ցողունի և տերևների: Նախկինում ընդգրկել են բոլոր օրգանիզմները՝ բացի բարձրակարգ բույսերից և կենդանիներից, այժմ՝ միայն ջրիմուռները:

ՍՏՈՐԳԵՏՆԱՅԱ ԳԱԶԱՅՈՒՄ, օգտ. հանածոների արդյունահանման մեթոդ՝ նրանց գազ. վիճակի վերածելու միջոցով: Կիրառվում է ծծմբի արդյունահանման համար (Ֆրաշի մեթոդ):

ՍՏՈՐԻՆ ԿԱԼԻՖՈՌՆԻԱ (Baja California), նինգ Մեքսիկայում՝ Կալիֆոռնիա թ–կղզու հս–ում: Տարածքը՝ 69,9 հզ. *կմ*^{2}, բն.՝ 3,15 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ Մեխիկալի:

ՍՏՈՐԻՆ ԿԱԼԻՖՈՌՆԻԱ ՀԱՐԱՎԱՅԻՆ (Baja California Sur), նինգ Մեքսիկայում՝ Կալիֆոռնիա թ–կղզու հվ–ում: Տարածքը՝ 73,5 հզ. *կմ*^{2}, բն.՝ 637 հզ. (2010): Վարչ. կենտրոնը՝ Լա Պաս:

ՍՏՈՐԻՆ ՀՐԱԶԴԱՆԻ ՋՐԱՆՑՔ, սկիզբ է առնում Արտաշատի ջրանցքից (Երևանի սահմաններում): Շահագործվել է 1957–ին: Քարաշեն փակ ջրանցքով (երկ.՝ 25 *մ*, բարձր.՝ 3 *մ*) անցնում է Հրազդանի աջ ափ, հասնում մինչև Արմավիրի մարզի տարածքը: Երկ.՝ 50 *կմ*, ջրթողունակությունը՝ 14 *մ*^{3}/*վ*: Ջրանցքի 2–րդ հերթը շահագործվել է 1962–ին: Լրացուցիչ ջուր է ստանում Քասաղ գետից:

ՍՏՈՐԻՆԴԱՆՈՒԲՅԱՆ ՀԱՐԹԱՎԱՅՐ, Ռումինական դաշտավայր, Դանուբի երկայնքով ձգվում է 560 *կմ*՝ երկաթե դարպասներից մինչև Սև ծով: Ս. ի–ում է *Բուխարևատը*: Լայն.՝ 40–120 *կմ*:

ՍՏՈՐՈԳՅԱԼ, երկկազմ նախադասության 2 գլխ. անդամներից. ցույց է տալիս ենթակայի գործողություն, վիճակ, հատկություն: Ըստ կազմության՝ լինում է պարզ (օր.՝ Նա կարդում է, կարդալու է, կարդաց, կկարդա ևն) և բաղադրյալ (օր.՝ Նա դարբին է):

ՍՏՈՐՋՐՅԱ ԹՈՒՆԵԼ, ստորջրյա կառույց՝ տրանսպորտի և հետիոտնի, ինչպես նաև ճարտարագիտ. հաղորդակցուղիների համար: Բնահողի զանգվածի մեջ փորված թունելներից բացի՝ լինում են նաև ջրաթմբերի, հենապայուների վրա, և «լողացող»՝ ճոպան. ձգաններով կամարակապ թունելներ: Լայն.՝ մինչև 40 *մ* և ավելի, բարձր.՝ 10 *մ* (օր.՝ Լա Մանշի և Անտվերպենի Ս. թ–ները):

ՍՏՈՐՋՐՅԱ ՀԱՆՈՒՅԹ օգտակար հանածոների, օգտ. հանածոների արդյունահանումը Համաշխ. օվկ–ի ընդերքի հանքավայրերից, որոնց մշակումն իրականացվում է ստորերկրյա հանքափորվածքներով և հորատանցքերով: Ս. ի–ին են պատկանում նաև օգտ. հանածոների կորզումը ծովի ջրից: Տես նաև *Օվկիանոս*:

ՍՏՈՐՋՐՅԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, հին և միջնադար. հուշարձանների հնագիտ. հետազոտություն ջրի տակ՝ ծովերի, լճերի, գետերի հատակին: Առաջացել է XX դ–ի սկզբին: Ս. ի–յան հիմնադիրներից է Ռուբեն *Օրբելին*:

ՍՏՈՐՋՐՅԱ ՀՐԱԲԽԽՆԵՐ, օվկ–ների հատակում ստորջրյա հրաբխ. գործունեության հետևանքով առաջացած կոնաձև բարձունքներ և լեռներ: Լայնորեն տարածված են կղզային աղեղներում: Հայտնաբերված են մի քանի հզ–ից ավելի Ս. հ., որոնց մի մասը գործող է:

ՍՏՈՐՋՐՅԱ ՁԱՅՆԱՅԻՆ ԱՆՑՈՒՂԻ, շերտ օվկ–ի որոշակի խորության տակ, որտեղ դիտվում է ձայնի գերհեռու (հզ–ավոր *կմ*–եր) տարածում: Պայմանավորված է ձայնի բեկումով (ռեֆրակցիա):

ՍՏՈՐՋՐՅԱ ՍՊՈՐՏ, ստորջրյա արագալող, սուզում, կողմնորոշում, որսորդություն ևն՝ հատուկ հանդերձանքի (աքվալանգ, դիմակ, լողակներ) կիրառմամբ: 2010–ին Ստորջրյա գործունեության համաշխ. համադաշնության (CMAS, հիմն.՝1959) անդամակցում է 80 երկիր: Աշխարհի առաջնություններն անցկացվում են 1957–ից: ՀՀ–ում տարածվել է 1958–ից, անցկացվել են ԽՍՀՄ առաջնություններ, 1971–ից՝ գավաթի մրցումներ: Հանրապետ. ֆեդերացիան ստեղծվել է 1962–ին: Հայ մարզիկներից առավել աչքի են ընկել Շավարշ *Կարապետյանը*, Կ. Կարապետյանը, Մ. Գաբրիելյանը, Ա. Ավետիսյանը, Մ. Խոջոյանը, Մ. Պիչագինան, Է. Գրիգորյանը և ուր.:

ՍՏՈՒՊՈՐՏ (Stockport), ք. Անգլիայում՝ Մեծ Մանչեստրի կազմում: Բն. ՝ 133 հզ. (2010):

ՍՏՈՒՔՍ (Stokes) Ջորջ Գաբրիել (1819–1903), անգլիացի ֆիզիկոս և մաթեմատիկոս: Լոնդոնի թագավոր. ընկ–յան նախագահ (1885–90): Հիմն. հետազոտությունները վերաբերում են հիդրոդինամիկային (Նավյե–Ս–ի հավասարում, **Ս–ի օրենք**): Ունի աշխ–ներ օպտիկայի, սպեկտրոդիտման և լյումինեսցենցիայի (**Ս–ի կանոն**), ձանրաչափության, վեկտոր. վերլուծության (**Ս–ի բանաձև**), ռենտգեն. ճառագայթման վերաբերյալ:

ՍՏՈՒՔՍ, կինեմատիկ մածուցիկության միավոր ՍԳՎ համակարգում. նշանակում են *Ստ*–ով՝ ի պատիվ Ջ. *Ստոքսի*: 1 *Ստ* = 1 *սմ*^{2}/*վ*:

ՍՏՈՒՔՍԻ ՕՐԵՆՔ, անսահմանափակ մածուցիկ հեղուկում դանդաղ շարժվող գնդի վրա ազդող դիմադրության ուժը՝ $F = 6\pi\mu rv$, որտեղ r–ը գնդի շառավիղն է, μ–ը՝ հեղուկի մածուցիկության գործակիցը, v–ն՝ գնդի շարժման արագությունը: Հաստատել է Ջ. *Ստոքսը* 1851–ին:

ՍՏՈՒՔՏՈՆ (Stockton), ք. ԱՄՆ Կալիֆոռնիայի նինգ–ում: Բն.՝ 291 հզ., ագլոմերացիայում՝ 646 հզ. (2010): Նվինգստ՝ Սան Խոակին ջրանցք–գետի ափին, մատչելի է ծով. նավերի համար: Ունի գեղ. թանգարան:

ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, եզրույթ, որը բնորոշում է պաշտոն. վիճակագրության չհաշվառած և ՀՆԱ–ում չներառված տնտ. գործունեության բոլոր տեսակները:

ՍՏՎԵՐԱՄԵՐՆԵՐ, սցիոֆիտներ (< հուն. skia – ստվեր և phyton – բույս), **ումբրոֆիտներ**, բույսեր, որոնք լավ են աճում ստվերում. լուսասինթեզի առլգն ուժգնությունը նրանց մոտ նկատվում է նվազ լուսավորության պայմաններում (օր.՝ անտառի թեքությունների տակ աճող սթերը, չխիմը ևն):

ՍՏՐԱԲՈՆ (մ. թ. ա. 64/63–մ. թ. 23/24), հին հույն աշխարհագետ, պատմագիր: Շատ է ճանապարհորդել: Հեղինակ է «Աշխարհագրություն» (17 գիրք) երկի, որն իր ժամանակի յուրատեսակ պատմաաշխարհագր. հանրագիտարան է, և «Պատմական հիշատակարաններ»–ի (43

գիրք), որը մեզ չի հասել (բացառությամբ՝ աննշան պատառիկների): Ս. տեղեկություններ է հաղորդում նաև Հայաստանի բնության և աշխարհագրության, պատմության, Հայոց թագավորների (Արտաշես, Զարեհ Ծոփացի, Տիգրան Բ, Արտավազդ, Արտանես Ծոփացի) վերաբերյալ: Տեղեկություններ կան նաև Փոքր Հայքի, Հայաստանի ք–ների, առևտրի, զորքի, ձիաբուծության, կրոնի, կրոն. ծիսակատարությունների ևն–ի մասին:

ՍՏՐԱԴԻՎԱՐԻՈՒՍ (Stradivari, Stradivarius) Անտոնիո (1644–1737), լար. աղեղն. գործիքների իտալացի վարպետ: Ն. ***Ամատիի*** աշակերտը: Գործիքներին բնորոշ են հստակ, հյութեղ տեմբրը, գեղ. ձևավորման կատարելությունը, նրբագեղությունը ևն: Դրանցով հանդես են գալիս աշխարհի նշանավոր կատարողներ: Ս–ի աշակերտներն էին իր որդիներ Ֆրանչեսկոն (1671–1743), Օմոբոնոն (1679–1742), նաև Կ. Բեռգոնցին:

ՍՏՐԱԺԵՍԿՈ Նիկոլայ Դմիտրիևիչ (1876–1952), ուկրաինացի թերապևտ: Ուկրաինայի ԳԱ (1934), ԽՍՀՄ ԳԱ (1943) և ԲԳԱ (1944) ակադ.: Սոց. աշխ. հերոս (1947): Աշխ–ները վերաբերում են արյան շրջանառության և մարսողության ախտաբանությանը, ռևմատիզմին: Վ. Պ. Օբրազցովի հետ տվել է սրտամկանի ինֆարկտի կլինիկայի դաս. նկարագրությունը:

ՍՏՐԱՆԻՑԿԻ (Stranitzky) Յոզեֆ (1676–1726), ավստրիացի դերասան, դրամատուրգ: Ավստր. պրոֆեսիոնալ թատրոնի հիմնադիրը: Թափառաշրջիկ թատերախմբերում կատարել է գերմ. ժող. թատրոնի կատակերգ. գործող անձ Հանսվուրստի դերը, ստեղծել նրա ավստր. տարատեսակը: Հիմնադրել է ավստր. առաջին մշտ. թատրոնը (1712, գերմ. լեզվով): Հեղինակ է կատակերգությունների:

ՍՏՐԱՍԲԵՐԳ (Strasberg) Լի (1901–1982), ամերիկացի ռեժ.: Ուսումնասիրել է Կ. Ս. ***Ստանիսլավսկու*** համակարգը, որը դարձել է նրա մանկավարժ. գործունեության հիմքը «Գրուպ–թիեթր»–ում (1931–ից) և Նյու Յորքի դերասան. ստուդիայում (1948–ից, 1951–ից՝ ղեկ.): Նկարահանվել է «Կնքահայր–II», «...և արդարադատություն բոլորի համար» և այլ ֆիլմերում:

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ, **Ստրասբուրգ** (Strasbourg), ք. Ֆրանսիայի արլ–ում, Ստորին Հռենոս դեպարտամենտի վարչ. և էլզաս պատմ. մարզի գլխ. քաղաքը, Նվինգստ Իլ և Հռենոս գետերի միախառնման վայրում: Բն.՝ 276 հզ. (2014): Ս. մի շարք համաեվրոպ. կառույցների՝ ԵՄ, ԵԽ ևն, որոշ մարմինների (Մարդու իրավունքների եվրոպ. դատարան, Եվրամիության խորհրդարան ևն) տեղակայման վայրն է: Պատմ. կենտրոնը Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՍՏՐԱՍԲՈՒՐԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Ֆրանսիայի բուհերից: Հիմնադրվել է 1621–ին Էլզասում՝ 1538–ից գործող բողոք. գիմնազիայի հիմքի վրա: 1970–ական թթ–ին բաժանվել է 3 համալսարանի, որոնք 2009–ին դարձյալ միավորվել են: 2015–ին ուներ ավելի քան 46 հզ. ուսանող: Ս. հ–ի շրջանավարտներից 18–ը Նոբելյան մրցանակակիրներ են:

ՍՏՐԱՎԻՆՍԿԻ Իգոր Ֆեոդորովիչ (1882–1971), ռուս. կոմպոզիտոր, դիրիժոր: Հեղինակ է «Հրեղեն հավք» (1910, 2–րդ խմբագրությունը՝ 1945), «Պետրուշկա» (1911), «Սրբազան գարուն» (1913), «Ագոն» (1953–57) և այլ բալետների, «Սոխակ» (1914), «Էդիպ արքա» (1927), «Օրփեոս» (1948), «Զվարճամոլի արկածները» (1948–51) և այլ օպերաների, սիմֆոնիաների (1940, 1945), գր. (հիմնականում՝ ինքնակենսագր.) երկերի («Իմ երաժշտական կյանքի ժամանակագրությունը», «Երկխոսություններ» ևն):

ՍՏՐԱՏԵԳՈՍ (հուն. – զորք և առաջնորդել), Հին Հունաստանում զինվ. և քաղ. լայն լիազորություններով օժտված զորահրամ.: Ժամանակակից նշանակությամբ՝ զորավար, ռազմ. խոշոր գործողությունների ղեկ.:

ՍՏՐԱՏԻՍՖԵՐԱ (< լատ. stratum – շերտ և հուն.՝ sphaira – այստեղ՝ թաղանթ), Երկրի թաղանթը, որը հիմնականում կազմված է նստվածք. և նախկին նստվածք. (փոխակերպումային) ապարներից:

ՍՏՐԱՏՈՍՏԱՏ, օդապարիկ՝ երկրի վերնոլորտ (ստրատոսֆերա, 10 *կմ*–ից բարձր) բարձրանալու համար:

ՍՏՐԱՏՈՍՖԵՐԱ (< լատ. stratum – շերտ և հուն.՝ sphaira – գունդ, ոլորտ), **վերնոլորտ,** ***տրոպոսֆերայից*** (ներքնոլորտ) վերև ընկած մթն–ի շերտը: Տարածվում է բարձր լայն–յուններում երկրի մակերևույթից 8–10 *կմ*, ցածր լայն–յուններում՝ 16–18 *կմ* բարձր–ներից մինչև 50–55 *կմ* բարձր–նե–րի վրա: Բնորոշ է ըստ բարձր–յան ջերմաստիճանի ավելացումը (–55ºC–0ºC–ին մոտ), փոքր տուրբուլենտությունը, ջրի գոլորշիների աննշան քանակությունը, օզոնի բարձր պարունակությունը:

ՍՏՐԵԼԵՑՅԱՆ ՋՈՐՔ, առաջին մշտ. զորքը Ռուս. պետությունում (XVI դ–ի կես–XVIII դ–ի սկիզբ), զինվել է հրաձիգ զենքով (այստեղից՝ անվանումը): Հավաքագրվել է ազատ բնակիչներից: Սպառազինությունը՝ պիշչալներ (երկարափող հրացաններ), մուշկետներ, տապարներ, թրեր: Կազմացրել է ***Պետրոս I***–ը:

ՍՏՐԵԼՆԱ, XVII–XIX դդ–ի 1–ին կեսի պալատապուրակ. համալիր: 1721–ին միավորվել է Պետրոդվորեցի հետ: Համալիրում են՝ Պետրովյան փայտե (1710–18, վերականգնվել է 1750–ին և 1834–40–ին, բարոկկո), Մեծ (Կոնստանտինովյան, XVIII–XIX դդ., 2001–03–ին վերակառուցվել է որպես «Կոնգրեսի պալատի» համալիր) պալատները, Ներքին պուրակը:

ՍՏՐԵԼՅՈՎ Էդուարդ Անատոլիևիչ (1937–1990), ռուս ֆուտբոլիստ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1967): ԽՍՀՄ լավագույն ֆուտբոլիստ (1967, 1968): Օլիմպ. խաղերի (1956), ԽՍՀՄ (1965) չեմպիոն:

ՍՏՐԵԿԱԼՈՎ Գեննադի Միխայլովիչ (1940–2004), ռուս տիեզերագնաց օդաչու, մայոր: ԽՄ հերոս (1980, 1984): Կատարել է 5 տիեզ. թռիչք (1980,1983, 1984, 1990, 1995)՝ 268 օր 22 *ժ* 25 *ր* ընդհ. տևողությամբ, 4 անգամ դուրս է եկել բաց տիեզերք՝ 20 *ժ* 57 *ր* տևողությամբ:

ՍՏՐԵՀԼԵՐ (Strehler) Ջորջո (1921–1997), իտալացի ռեժ.: 1947–ին (Պ. Գրասիի հետ) Միլանում հիմնադրել և ղեկավարել է (նաև 1972–ին) առաջին մշտ. «Պիկոլո–թեատրո» դրամատիկ. թատրոնը, 1968–72–ին՝ սեփ. թատերախումբը: Բեմադրել է Մ. Գորկու «Հատակում», Կ. Գոլդոնիի «Երկու տիրոջ ծառան» (երկուսն էլ՝ 1947), Վ. Շեքսպիրի «Լիր արքա» (1972) թատեր. ներկայացումները, Ջ. Վերդիի «Տրավիատա» (1947), «Մակբեթ» (ըստ Վ. Շեքսպիրի, 1975) օպերաներ ևն:

ՍՏՐԵՊՏՈԿՈԿԵՐ (< հուն. streptos – շղթա և ***կոկկր***), գնդաձև, անշարժ բակտերիաների ցեղ: Բազմանում են մեկ հարթության մեջ՝ բջջի կիսումով՝ առաջացնելով բջիջների շղթա: Հանդիպում են հողում, բույսերի, մարդու և կենդանիների մաշկի վրա: Ախտածին Ս. առաջացնում են մարդու ստրեպտոկոկ. վարակիչ հիվանդություններ և կենդանիների ստրեպտոկոկոզներ: Որոշ տեսակներ կիրառում են կաթնաթթվային մթերք ստանալու համար:

ՍՏՐԵՊՏՈԿՈԿՈՋ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ, տնային թռչունների սուր կամ քրոնիկ. վարակիչ հիվանդություն: Հարուցիչը Streptococcus zooepidemicus ստրեպտոկոկն է: Վարակի աղբյուրը հիվանդ թռչուններն են: Վերջինների մահացությունը երբեմն հասնում է մինչև 90 %–ի: Թռչունները հանկարծակի սատկում են վարակվելուց 12–24 *ժ* հետո:

ՍՏՐԵՊՏՈՄԻՑԻՆ, հակաբիոտիկ. առաջանում է ակտինոմիցետների խմբի միկրոօրգանիզմներում: Ունի հակաբակտեր. ազդեցության լայն սպեկտր: Օգտագործվում է որպես դեղանյութ՝ թոքաբորբի, տուբերկուլոզի և այլ հիվանդությունների բուժման համար:

ՍՏՐԵՊՏՈՑԻԴ (Streptocidum), սուլֆանիլամիդների խմբի հակաբակտեր. պատրաստուկ: Կիրառվում է համաճարակ. ուղեղողնուղեղ. պատյանների բորբոքման (մինինգիտ), կարմիր քամու, անգինայի, միզուկաբորբի ևնի, նաև վերքերի բուժման նպատակով:

ՍՏՐԵՄՆԵՐ, Ստրեսսներ Մատիաուդա (Stroessner Matiauda), Ալֆրեդո (1912–2006), Պարագվայի նախագահ՝ 1954–89–ին, փաստացի բռնապետ: Գեն.: Տապալվել է, փախել երկրից:

ՍՏՐԺԵԼՉԻԿ (Strzelczyk) Վլադիմիր Իգնատևիչ (1921–1995), ռուս. դերասան (ծագումով՝ լեհ): ԽՍՀՄ ժող. արտիստ (1974): Սոց. աշխ. հերոս (1988): 1938–ից՝ Լենինգրադի դրամատիկ. մեծ թատրոնի (1992–ից՝ Ս. Պետերբուրգի Գ. Տովստոնոգովի անվ. դրամատիկ մեծ թատրոն) դերասան (ՅԻգանով՝ Մ. Գորկու «Բարբարոսներ», Գրեգորի Սոլոմոն՝ Ա. Միլլերի «Գին», իշխան Պանտիաշվիլի՝ Ա. Ա. Ցագարելու «Խանումա», Գորդոդուլին՝ Ա. Ն. Օստրովսկու «Ամեն իմաստուն ունի միամտություն»): Նկարահանվել է կինոյում:

ՍՏՐԺԻԳՈՎՍԿԻ (Strzydowski) Յոզեֆ (1862–1941), ավստրիացի արվեստաբան (ծագումով՝ լեհ): Ս. Հայաստանում եղել է 2 անգամ՝ 1889 և 1915–ին: Գրել է «Էջմիածնի Ավետարանը» ուսումնասիրությունը, որտեղ հայ արվ–ը դիտում է ուրույն և ոչ թե «գավառային» երևույթ: Օգտագործելով Թ. Թորամանյանի փաստագր. նյութերը՝ 1918–ին հրատարակել է «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» երկհատոր աշխ–ը, որտեղ հայկ. արվ–ը հավասար է դասել հունականի և գոթականի հետ: Հեղինակ է նաև «Արևելք, թե՞ Հռոմ» (1901) գրքի:

ՍՏՐԻԺԵՆՈՎ Գլեբ Ալեքսանդրովիչ (1925–1985), ռուս. դերասան: ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1974): Օ. Ա. ***Ստրիժենովի*** եղբայրը: Նկարահանվել է «Մի քանի օր Ի. Ի. Օբլոմովի կյանքից», «Գարաժ», «Կարմիրը և սևը», «Մնացած ամբողջ կյանքում» (վերջին երկուսը՝ հեռուստաֆիլմ) և այլ կինոնկարներում:

ՍՏՐԻԺԵՆՈՎ Օլեգ Ալեքսանդրովիչ (ծ. 1929), ռուս. թատրոնի դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1988): Գ. Ա. ***Ստրիժենովի*** եղբայրը: Նկարահանվել է «Բոռ», «Քառասունմեկերորդը», «Կապիտանի աղջիկը», «Սպիտակ գիշերներ», «Իմ փոխարեն», «Հինգ աստղ» և այլ ֆիլմերում: Հեղինակ է «Խոստովանություն» (1999) գրքի:

ՍՏՐԻԽՆԻՆ, ալկալոիդ. պարունակվում է ստրիխնոս ցեղի արևադարձ. բույսի (փսիբնկուզենի) սերմերում: Գրգռում է ԿՆՀ, բարձր դեղաչափերից առաջանում են ջղաձգություններ: Ս–ի աղերը, նաև մզվածքն ու թուրմն օգտագործում են որպես տոնուսավորող միջոց՝ նյարդ. հիվանդությունների ժամանակ:

ՍՏՐԻՆԳԲԵՐԳ (Strindberg) Յուհան Ավգուստ (1849–1912), շվեդ գրող: Հեղինակ է «Ուտոպիան իրականության մեջ» (1885) նովելների ժող–ի, «Հայրը» (1887), «Ֆրյոկեն Յուլիա» (1888), «Ընկերներ» (1888), «Վարկատուներ» (1889) սոցիալ–հոգեբ., «Սահվան պարը» (1901), «Ուրվականների սոնատը» (1907) դրամաների, «Կարմիր սենյակ» (1879) սոցիալ–քննադատ. վեպի, «Ամուսնություններ» (հ. 1, 2, 1884, 1886) պատմվածքների ժող–ի, «Ճանապարհ դեպի Դամասկոս» (1898–1904) եռերգության, «Գուստավ Վազա» (1899), «Էրիկ XIV» (1899), «Քրիստինա» (1903) և պատմ. այլ դրամաների, ինքնակենսագր. «Դժոխք» (1897) վեպի, հրապարակախոս. գործերի: «Խենթի խոստովանությունը» (1888), «Խութակողզիներում» (1890) վեպերի, «Չանդալա» (1889) վիպակի հերոսը նիցշեական «գերմարդն» է:

ՍՏՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ, հաս. փոխհարաբերությունների համակարգ, երբ ստրուկը, արտադր–յան միջոցների հետ մեկտեղ, իր տիրոջ սեփականությունն է: Տարածված է եղել հին դարերում: Առավել լայն չափեր և տնտ. նշանակություն է ստացել XVII–XIX դդ–ի սկզբներին Ամերիկ. մայրցամաքում, որտեղ ստրուկներ էին բերում Աֆրիկայից՝ պլանտացիաներում աշխատելու համար: Հիմնականում վերացվել է XIX դ–ի ընթացքում:

ՍՏՐՅՈՄԳՐԵՆ (Strömgren) Սվանտե Էլիս (1870–1947), դանիացի աստղագետ: Բ. Գ. Դ. ***Ստրյոմգրենի*** հայրը: Կոպենհագենի աստղադիտարանի տնօրեն (1913–ից): Նրա գլխավորությամբ շուրջ 30 տարի աստղադիտարանն զբաղվել է հայտնի «3 մարմինների կոպենհագենյան հիմնահարցով», փնտրվել են պարբեր. ուղեծրեր: Բացահայտել է, որ պարբող. ուղեծրերով գիսավորները մինչև Արեգակն. համակարգ գալը շարժվում են էլիպսային ուղեծրերով:

ՍՏՐՅՈՄԳՐԵՆ Բենտ Գեորգ Դանիել (1908–1987), դանիացի աստղաֆիզիկոս: Ս. Է. ***Ստրյոմգրենի*** որդին: Կոպենհագենի աստղադիտարանի տնօրեն (1940–ից): Հաշվարկել է (1940) արեգակն. մթն–ի 1–ին մոդելները, բացատրել կարմիր հսկաների ի հայտ գալը, գերտաք աստղերի շուրջ (Ս–ի գոտի) միջաստղ. միջավայրի իոնացումը (1939, 1948), մշակել է գերտաք աստղերի սպեկտր. դասակարգում (Ս–ի համակարգ): Հ. Ն. Ռասելի մրց. (1965):

ՍՏՐՈԲԻԼ (լատ.՝ strobilos – սոճու կամ եղևնու կոն), մի շարք բարձրակարգ բույսերի (ձիաձետ, գետնամուշկ, մերկասերմեր) բազմացման օրգան: Տեսակափոխված կարճացած ընձյուղ է, որը կրում է մասնագիտացած տերևներ՝ ***սպորոֆիլներ***, որոնց վրա ձևավորվում են ***սպորանգիումները***: Ասեղնատերևազգիների Ս–ները արական (միկրոստրոբիլներ) և իգական (մեգաստրոբիլներ) կոներն են, երբեմն դրանք կոչվում են Ս–ների հավաքածու: Ծածկասերմերի Ս–ին համարժեք է ծաղիկը:

ՍՏՐՈԳԱՆՈՎ Հենրիխ Բորիսովիչ (ծ. 1932), ռուս մետաղագետ: ՌԳԱ թղթ. անդամ (1990): Աշխ–ները վերաբերում են շարժիչային ջերմադիմացկուն համաձուլվածքների մշակման և ստացման տեխնոլոգիային: ԽՍՀՄ Պետ. (1972), Լենինյան (1984) մրց–ներ:

ՍՏՐՈԳԱՆՈՎ Սերգեյ Գրիգորևիչ (1794–1882), կոմս, ռուս. պետ. գործիչ, հնագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. անդամ (1827): Հեծելազորի գեն. (1852): 1859–ին՝ մոսկովյան գեն–նահանգապետ: Մոսկվայի պատմության և ռուս. հնությունների ընկ–յան նախագահ (1836–48, 1857–74): Ստրոգանովյան ուսումնարանի (1825), Հնագիտ. հանձնաժողովի (1859) հիմնադիր, Հվ. Ռուսաստանի հնագիտ. պեղումների կազմակերպիչ:

ՍՏՐՈԵՎ Եգոր Սեմյոնովիչ (ծ. 1937), խորհրդ. կուս. և Ռուսաստանի պետ. գործիչ: ՀԳԱ ակադ. (2013), ՌԳԱԱ ակադ. (1997): 1989–91–ին՝ ԽՄԿԿ ԿԿ քարտուղար գյուղատնտ. հարցերով: 1990–91–ին՝ ԽՄԿԿ ԿԿ քաղբյուրոյի անդամ: ՌԴ Դաշնային խորհրդի նախագահ (1996–2001):

ՍՏՐՈԵՎ Նիկոլայ Սերգեևիչ (1912–1997), ավիացիայի բնագավառի ռուս գիտնական: Սոց. աշխ. հերոս (1966, 1982): Աշակել է թռիչք. փորձարկումների և բնական պայմաններում ինքնաթիռների աերոդինամիկ. բնութագրերի ուսումնասիրության եղանակներ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949):

ՍՏՐՈՈՔ (Stroks) Օսկար Դավիդովիչ (1892/93–1975), լատիշ կոմպոզիտոր: 1920–ական թթ–ից համարվել է «տանգոյի արքա»: Հեղինակ է ռոմանսների և սենտիմենտալ–ռոմանտիկ. տանգոների («Սև աչեր», «Լուսնի ռապսոդիա», «Ասեք ինչո՞...» ևն), ֆոքստրոտների և այլ գործերի:

ՍՏՐՈՆՑԻՈՒՄ (Stroncium), Sr, տարրերի պարբեր. համակարգի II խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 38, ա. զ.՝ 87,62, հողալկալիական մետաղ է: Կոչվել է Ստրոնտիան գ–ի (Շոտլանդիա) մոտ գտնված միներալի (ստրոնցիանիտ) անունով: Արծաթասպիտակավուն, փափուկ մետաղ է, խտ.՝ 2,63 $գ/սմ^3$, $t_{հալ.}$՝ 768°C: Քիմիապես ակտիվ է, այդ պատճառով կիրառությունը սահմանափակ է (պղնձի և բրոնզի հալման ժամանակ դրանք մաքրելու համար, էլկտրավակուում. տեխնիկայում՝ որպես գազակլանիչ): Աղերն օգտագործվում են ներկերի, ջնարակների և արծնի արտադր–յունում: $SrTiO_3$–ը սեգնետաէլեկտրիկ է: Միջուկ. պայթյունների ժամանակ առաջանում է ճառագայթաակտիվ իզոտոպը՝ ^{90}Sr ($T_{1/2}$ = 27,7 տարի), որը վտանգավոր է մարդու համար:

ՍՏՐՈՑՅԻ (Strozzi) Բեռնարդո (1581–1644), Ձենովայի դպրոցի իտալացի նկարիչ: Ս–ի գործերն առանձնանում են գեղանկարչ. ազատ ձևերով, կերպարների ռեալիստ. («Խոհարարուհի»), երբեմն՝ երգիծ. պատկերմամբ («Պչրուհին հայելու առջև»): Ս–ի «Նիկոլա Կուչչիի դիմանկարը (1637) ՀԱՊ–ում է:

ՍՏՐՈՖԱՆՏ, շնամեռուկազգիների ընտանիքի ծառանման լիանների, հազվադեպ՝ թփերի ցեղ: Հայտնի է 50–60 տեսակ՝ արևադարձ. Աֆրիկայում, Մադագասկարում, Հվ. և Հվ–արլ. Ասիայում: Սերմերը պարունակում են ստրոֆանտին՝ սրտային գլիկոզիդը:

ՍՏՐՈՒԳԱՑԿԻՆԵՐ, ռուս գրող–եղբայրներ: **Արկադի Նաթանովիչ Ս.** (1925–1991) և **Բորիս Նաթանովիչ Ս.** (ծ. 1933): Համահեղինակ են գիտաֆանտաստիկ. պատմվածքների ու վիպակների, նաև «Դժվար է աստված լինել» (1964), «Երկուշաբթին սկսում է շաբաթ օրվանից» (1965), «Մարդաբնակ կղզի» (1969), «Զբոսախնջույք ճամփեզրին» (1972), «Միլիարդ տարի աշխարհի վերջից առաջ» (1976–77), «Կաղ ճակատագիր» (1989) սոցիալ. թեմաներով ֆանտաստիկ. վիպակների, «Դատապարտված քաղաքը» (1988–89) վեպի, «Չպայմանավորված հանդիպումներ» (1980) արձակ գործերի ժող–ի, բազմաթիվ կինոսցենարների:

ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ՄԵԾ ԼԻՃ, Կանադայում: Մակերեսը՝ 28,6 հզ. $կմ^2$, խոր.՝ մինչև 150 *մ*: Լիճ են թափվում Ստրուկների, Մաքենզի գետերը: Նավարկելի է: Նվիզգստ–ներն են Ֆորտ Ռեզոլյուշենը, Յելոունայֆը:

ՍՏՐՈՒՄԻԼԻՆ (Ստրումիլլո–Պետրաշկևիչ) Ստանիսլավ Գուստավովիչ (1877–1974), ռուս. տնտեսագետ և վիճակագիր: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1931): Սոց. աշխ. հերոս (1967): Աշխ–ները վերաբերում են տնտ–յան, վիճակագրության, ժող. տնտ–յան կառավարման, ժողովրդագր. կանխատեսման, քաղտնտ–յան, տնտ. պատմության հարցերին: ԽՍՀՄ Պետ. (1942), Լենինյան (1958) մրց–ներ:

ՍՏՐՈՒՆՆԻԿՈՎ Նիկոլայ Վասիլևիչ (1886–1940), ռուս. չմշկորդ: Աշխարհի և Եվրոպայի չեմպիոն (1910–11), Ռուսաստանի քառակի չեմպիոն (1908–10՝ չմուշկներ, 1909՝ հեծանվային սպորտ):

ՍՏՐՈՒՆՆԻԿՈՎ Վլադիմիր Ալեքսանդրովիչ (1914–2005), ռուս. գենետիկ: ՌԳԱ ակադ. (1987): Սոց. աշխ. հերոս (1990): Մշակել է թթենու մետաքսագործի ցանկալի սեռի առանձնյակների ստացման արդ. եղանակ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1981):

ՍՏՐՈՒՉԿՈՎ Վիկտոր Իվանովիչ (1907–1988), ռուս. վիրաբույժ: ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1965): Սոց. աշխ. հերոս (1977): Աշխ–ները վերաբերում են անհետաձգելի վիրաբուժությանը, թոքերի հիվանդությունների վիրաբուժ. բուժմանը: Լենինյան (1961), ԽՍՀՄ Պետ. (1975) մրց–ներ:

ՍՏՐՈՒՉԿՈՎԱ Ռաիսա Ստեպանովնա (1925–2005), բալետի ռուս. արտիստուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1959): 1944–78–ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մենապարուհի (Մարիա՝ Բ. Վ. Ասաֆևի «Բախչիսարայի շատրվանը», Ավրորա՝ Պ. Ի. Չայկովսկու «Քնած գեղեցկուհին», Մոխրոտ, Ջուլիետ՝ Ս. Ս. Պրոկոֆևի «Մոխրոտը», «Ռոմեո և Ջուլիետ», ևն):

ՍՏՐՈՒՎԵ Նիկիտա Ալեքսեևիչ (ծ. 1931), ռուս. հրապարակախոս, գրականագետ, հրտ.: 1978–ից՝ Փարիզի ***«ԻՄԿԱ–Պրեսս»*** ռուս. հրտչ–յան տնօրեն. տպագրել է ԽՍՀՄ–ում արգելված տարաբնույթ գրքեր (այդ թվում՝ Ա. Ի. ***Սոլժենիցինի***, գրել է նաև գրականագիտ. հոդվածներ): Հեղինակ է «Քրիստոնեությունը ԽՍՀՄ–ում» (ֆրանս., 1963), Օ. Է. Մանդելշտամի մասին մենագրության (1982, ռուս.՝ 1988), «Ուղղափառություն և մշակույթ» (ռուս. հրտ.՝ 1992), «70 տարի ռուսական տա-

րագրության մեջ» (ֆրանս., 1996): ՌԴ Պետ. մրց. (1998):

ՍՏՐՈՒՎԵ Վասիլի Յակովլևիչ (Ֆրիդրիխ Գեորգ Վիլհելմ, 1793–1864), ռուս. (ծագումով՝ գերմանացի) աստղագետ և գեոդեզիստ: Օ. Վ. ***Ստրուվեի*** հայրը: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1832), Պուլկովոյի աստղադիտարանի հիմնադիր-տնօրենը (1839–62): Առաջինն է որոշել (1837) աստղ. ***պարալաքսը***, բացահայտել է լույսի կլանումը միջաստղ. տարածությունում: Կ. Ի. ***Տեննների*** հետ չափել է միջօրեականի աղեղը Դանուբից մինչև Հս. սառուցյալ օվկ.՝ մոտ 25°20′:

ՍՏՐՈՒՎԵ Վասիլի Վասիլևիչ (1889–1965), ռուս. արևելագետ (ծագումով՝ գերմանացի): ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1935): Աշխ-ները վերաբերում են Եգիպտոսի, Միջագետքի, Իրանի, Անդրկովկասի, Միջին Ասիայի պատմությանը և մշակույթի պատմությանը: Անդրադարձել է նաև մ. թ. ա. 521/520-ին Հայաստանում տեղի ունեցած իրադարձություններին:

ՍՏՐՈՒՎԵ Օտտո Վասիլևիչ (Օտտո Վիլհելմ, 1819–1905), ռուս. (ծագումով՝ գերմանացի) աստղագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1852–89): Վ. Յ. ***Ստրուվեի*** որդին: Պուլկովոյի աստղադիտարանի 2-րդ տնօրենը (1862–89): Աշխ-ները վերաբերում են կրկնակի աստղերին (հայտնաբերել է ավելի քան 500-ը):

ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **էթիմոլոգիա** (< հուն. etymon – ստույգ, բառի ստույգ իմաստ և ***…լոգիա***), 1. բառի կամ ձևույթի ծագումը: 2. Լեզվաբ-յան բաժին. պատմահամեմատ. մեթոդով ուսումնասիրում է բառերի ու նրանց բաղադրիչների ծագումը, նրանց սկզբն. ձևն ու իմաստը, կազմությունը, լեզվ. դերն ու գործառությունը, հետագա զարգացումն ու փոփոխությունները:

ՍՏՈՒՈԿԱ-ԳՈՒՑԵՎԻՉՅՈՒՍ (Stuoka-Gucevičius) Լաուրինաս (1753–1798), լիտվացի ճարտ.: Կառույցներն աչքի են ընկնում ձևերի պարզությամբ, ճարտ. հորինվածքի ներդաշնակությամբ (Վիլնյուսի Մայր տաճարը, 1783–1801):

ՍՏՈՒՉԵՆԿՈ Անդրեյ Տրոֆիմովիչ (1904–1972), խորհրդ. զորապետ, բանակի գեն. (1964): ՀՄՊ-ի ժամանակ եղել է հեծելագնդի, հեծելազոր. և հրաձգ. դիվիզիաների, 19-րդ գվարդ. հրաձգ. կորպուսի հրամ.: Պատերազմից հետո՝ մի քանի ԶՕ-ների զորքերի հրամ., 1968–69-ին՝ ռազմ. ակադ-ի պետ (Մոսկվա):

ՍՏՈՒՊԱ, բուդդ. պաշտամունք. կառույց, որտեղ պահվում են սուրբ մասունքներ, մահարձաններ: Մ. թ. ա. առաջին դարերից հայտնի են կիսագնդաձև Ս-ներ (կանոն. տեսակը՝ Հնդկաստանում, Նեպալում), ավելի ուշ՝ զանգակաձև, աշտարակաձև, քառակուսի, աստիճանաձև և այլ տեսակներ:

ՍՏՈՒՊԻՑԱ (Stupica) Բոյան (1910–1970), սերբ ռեժ.: Բելգրադի հարավալավ. դրամատիկ. թատրոնի հիմնադիրներից, 1964-ից՝ Բելգրադի ազգ. թատրոնի ռեժ.: 1955–57-ին՝ Զագրեբի խորվաթ. ազգ. թատրոնի տնօրեն:

ՍՏՈՒՊԿԱ Բոգդան Սիլվեստրովիչ (1941–2012), ուկրաինացի դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1991): Ուկրաինայի հերոս (2011): 1978-ից՝ Կիևի Ի. Ֆրանկոյի անվ. ուկր. դրամատիկ. թատրոնի (2001-ից՝ գեղ. ղեկ.) դերասան (Լիր արքա՝ Վ. Շեքսպիրի «Լիր արքա», ևն): Նկարահանվել է «Տարաս Բուլբա», «Չինական սպասք» և այլ ֆիլմերում: ԽՍՀՄ Պետ. մրց. (1980):

ՍՏՈՒՐՈՒԱ Ռոբերտ Ռոբերտի (ծ. 1938), վրացի ռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1982): 1961-ից՝ Թբիլիսիի Շ. Ռուսթավելու անվ. դրամատիկ. թատրոնի ռեժ. (1979-ից՝ գլխ. ռեժ., 1986-ից՝ գեղ. ղեկ., 1980-ից՝ նաև տնօրեն), 2011-ից՝ Մոսկվայի «Et Cetera» թատրոնի գլխ. ռեժ.: Բեմադրել է Բ. Բրեխտի «Կովկասյան կավճի շրջանը» (1975), Վ. Շեքսպիրի «Ռիչարդ III» (1979), Մ. Ֆ. Շատրովի «Բրեստի հաշտություն» (1988, Մոսկվայի Ե. Վախթանգովի անվ. թատրոն), Վ. Շեքսպիրի «Համլետ» (1988) ևն:

ԽՍՀՄ (1979), ՌԴ (1999) Պետ. մրց-ներ:

ՍՐԱԹՎԵՎ ՈՐՈՐՆԵՐ, **սրաթռիչք որորներ**, **ֆրեզատներ**, հավալուսնանմանների ընտանիքի օվկիանոս. թռչունների ընտանիք: Երկ.՝ մինչև 1 *մ*: Թևերը նեղ են, բացվածքը՝ մինչև 2 *մ*: Հայտնի է 5 տեսակ՝ Ատլանտ., Հնդ. և Խաղաղ օվկ-ների արևադարձ. մասերում: Կյանքի մեծ մասն անցկացնում են օդում, լողալ չեն կարողանում, որսը ջրից բռնում են թռիչքի ժամանակ: Բնադրում են մանր կղզիներում:

ՍՐԱԿԱՆՁ ԳԻՇԵՐԱԶՂԱՀԻԿ (Myotis blythi), հարթաքիթ չղջիկների ընտանիքի կաթնասուն կենդանի: Մարմնի երկ.՝ 58–74, պոչինը՝ 45–60 *մմ*, նախաբազկինը՝ մոտ 60 *մմ*, կ. զ.՝ մոտ 23 *գ*: ՀՀ-ում հանդիպում է կիսաանապատներից մինչև մերձալպ. գոտի: Մնվում է մեծ բզեզներով, թիթեռներով ևն:

ՍՐԱՀ, շինություն, շենքի մաս, որի երկայն. պատերից մեկը սովորաբար փոխարինում են սյուներով, մույթերով, կամարաշարով ևն: Տարածված է սյունազարդ Ս.՝ սյունասրահը: Քարաշեն սյունասրահներ ունեցել են IV–VII դդ-ի (Թանահատ, Կառնուտ, Գառնի, Դվին, Օձուն, Զվարթնոց ևն), ուշ միջնադարի (Էջմիածնի Սբ Գայանե) հայկ. եկեղեցիները: Ս. ունեն նաև ժամանակակից բնակելի և հաս. շենքերը:

ՍՐԱՊԻՈՆՅԱՆ Ռիմա Մկրտչի (ծ. 1936), կենսաքիմիկոս: Բժշկ. գիտ. դ-ր (1988), պրոֆ. (1992): Աշխ-ները վերաբերում են գլխուղեղի ենթատեսաթմբի առանձնահատուկ սպիտակուցահորմոն. համալիրների կարգավորիչ գործունեությանը:

ՍՐԱՊԻՈՆՅԱՆ Սերժիկ Գագիկի (ծ. 1957), բանասեր: Բանասիր. գիտ. թեկնածու (1989): ՀՀ Սփյուռքի նախարարի տեղակալ (2013-ից): Ուսումնասիրությունները վերաբերում են 20-րդ դարասկզբի արևմտահայ քաղաքագիտ. պոեզիայի հարցերին, գր. առնչություններին:

ՍՐԱՊՅԱՆ Արամայիս (1910–1969), գրող, հաս., մշակութ. գործիչ: Հեղինակ է «Հանդիպումներ մուսային հետ» (1949), «Ազդոյեն Վենետիկ» (1956) բանաստեղծությունների, «Ձէնքի տակ» (1956), «Ալպեան ռազմիկներուն հետ» (1959) պատմվածքների, «Անավարտ երթ» (1971) բանաստեղծությունների և պատմվածքների ժող-ների:

ՍՐԱՊՅԱՆ (Երզնկացի) Արմենուհի Նիկողոսի (1918–2000), բանասեր, բնագրագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1974): Հեղինակ է «Հովհաննես Երզնկացի» (1958), «Հայ միջնադարյան զրույցներ» (1969), «Պատմութիւն վասն մանկանն եւ աղջկանն. Պատմութիւն յաղագս Փաիլոլ թագաւորին» (1983), «Բանք չափաւ» (1986), «Հովհաննես Երզնկացի Պլուզ: Կյանքը և գործը» (1993) և այլ աշխ-ների:

ՍՐԱՊՅԱՆ (Տեր-Սրապյան) Լևոն Ղազարի, **Հերընդ Լևոն** (1892–1974), բանասեղծ: Գրել է անգլ.: 1912-ից՝ ԱՄՆ-ում: Հեղինակ է «Ժամն այս զարթնումի» (1925) բանաստեղծությունների ժող-ի, «Քղի (Տեղեկագրութիւն եւ ազգագրութիւն)» (1960) աշխ-յան:

ՍՐԱՊՅԱՆ Պետրոս (1833–1898), նկարիչ: Կ. Պոլսում ձևավորել է Բերայի՝նոր թատրոնը, Հունաստանի դեսպանատան շենքը, ***Մկրտիչ Ա. Վանեցու*** պատվերով՝ Սբ Էջմիածնի վանքի ժողովարանը և Վեհարանի թանգարանը (1893–96): Հեղինակ է «Ղարիբ Աշեցի» (1882), «Նատյուրմորտ: Միգեր», «Հայուհի» (բոլորը՝ ՀԱՊ-ում) և այլ գործերի:

ՍՐԱՏՈՒՏ (Enterobius vermicularis), նեմատոդների դասի որդ: Մակաբուծում է մարդու աղիներում: Առաջացնում է ***էնտերոբիոզ*** հիվանդությունը: Էգի երկ.՝ 9–12, արուինը՝ 2–5 *մմ*:

«ՍԲԱԶԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ», մ. թ. ա. VI–III դդ-ում հուն. քաղաքների ու ցեղերի կրոնաքաղ. միությունների (ամֆիկտիոնիաների) միջև՝ միմյանց նկատմամբ և Հունաստանում հեգեմոնիա հաստատելու համար: Առավել հայտնի են ղելփյան ամֆիկտիոնիայի անդամների միջև «Ս. պ.» (մ. թ. ա. 355–346, 340–339):

ՍՐԲԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ, քրիստ. 7 խորհուրդներից: Ըստ եկեղեց. ուսմունքի՝ Ս. հոգևորականներին հաղորդվում է ձեռնադրման արարողությամբ: Զևավորվել է քրիստ. եկեղեցու կազմավորման, համայնքը կղերականների ու աշխարհիկների բաժանման և հոգևորականության առանձնաշնորհի դասի առաջացման ընթացքում, երբ հոգևորականը հռչակվել է միջնորդ Աստծու և հավատացյալների միջև:

ՍՐԲԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, սրբագրություն, սրբերի կյանքի նկարագրություն, նրանց նվիրված խոսք կամ երկ: Ս-յան հիմն. տեսակներն են վկայաբանությունն ու վարքը: Ս-յան մեջ ներառված են նաև ներբողյանները, սրբերին նվիրված եկեղեց. կարգերը: Հայ գրկ-յան մեջ Ս. առաջ է եկել քրիստ. պաշտոն. դավանանքի հետ (IV–V դդ.) և գոյատևել ողջ միջնադարում:

ՍՐԲԱՆԵՍԻ ՎԱՆՔ, **Սուրբ Հովհաննեսի վանք, Հովհան Օձնեցու վանք**, VIII–XVII դդ-ի ճարտ. համալիր ՀՀ Լոռու մարզի Արդվի գ-ում: Բաղկացած է 2 թաղածածկ եկեղեցիներից, զանգակատնից, կոթողից: Հս. եկեղեցու բեմի առջև Հովհաննես Գ Օձնեցու տապանաքարն է: XIII դ-ում եկեղեցու արմ. ճակատին կցվել է կամարակապ սրահ: XVII դ-ում եկեղեցիներից հվ կառուցել են ռոտոնդայով զանգակատուն: Վանքի տարածքում տնտ. շենքերի և խցերի ավերակներ են:

ՍՐԲԱՆԿԱՐՁՈՒԹՅՈՒՆ, կրոն. թեմաներով և սյուժեներով եկեղեց-պաշտամունք. նկարչության տեսակ միջնադարում: Ս-յան ստեղծագործությունները՝ սրբապատկերներ, գեղանկարչ. առանձին հորինվածքներ ևն: Պահպանված հնագույն նմուշներն Առաջավոր Ասիայից են (VI դ.): Միջնադար. Հայաստանում Ս-յան գոյության և արվ-ի մասին գրել են եկեղեցու հայերը, մատենագետները (Մովսես Խորենացի, Ներսես Շնորհալի և ուր.), սակայն պահպանված հաստոց. նմուշներ

չկան: Ս–յան բազմաթիվ գլուխգործոցներ կան հայկ. մանրանկարչության մեջ: XX դ–ում բարձրարվ. սրբապատկերներ են ստեղծել Վ. Սուրենյանցը, Գ. Շաղյանը, Գ. Խանջյանը և ուր.:

ՍՐԲԱՊԱՏԿԵՐ, քրիստ. կրոնում (ուղղափառ և կաթոլիկ) Հիսուս Քրիստոսի, Տիրամոր և եկեղեցու հաստատած սրբերի պաշտամունք., հատուց. պատկերներ: Ս–ի պաշտամունքն սկսվել է մ. թ. ա. II դ–ից, ծաղկել IV դ–ում: Հավատացյալները երբեմն Ս. օժտել են գերբն. հրաշագործ հատկանիշներով: Հայկ. հրաշագործ մատյաններ են համարվել հատկապես «Նարեկը», բժշկության Ավետարանները: Տես նաև *Սրբանկարչություն*:

ՍՐԲԱՊՂԾՈՒԹՅՈՒՆ, եկեղեց. *սրբության* անարգում, աստվածուրացում: Փխբ. իմաստով՝ պատվելի որևէ բանի անարգում:

ՍՐԲԵՐ, իրենց բարեպաշտության, առաքինության, հավատքին խստորեն հետևելու (ընդհուպ հանուն Քրիստոսի նահատակություն) համար եկեղեցու կողմից հատուկ պատվելի անձինք քրիստոնեության մեջ, հաճախ օժտված են հրաշագործ կարողություններով: Ս–ի պաշտամունքը բացակայում է բողոքականության մի շարք ուղղություններում: Ճգնավորների նույնօրինակ պաշտամունք հատուկ է նաև այլ կրոններին (բուդդայականություն, մահմեդականություն):

ՍՐԲՈՍԿՈՓ, մարդու ողնաշարի ծայրային (ստորին) հատվածը՝ կազմված 1 կամ մի քանի սերտաճած ու թերզարգացած ողներից. կոնքի հենարան է ծառայում:

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ, հիմնադրվել է 1929–ին Երուսաղեմում՝ Եղիշե *Դուրյան* պատրիարքի ջանքերով՝ Ժառանգավորաց վարժարանին ու մոնդ–ին կից և նրա առաջարկով էլ անվանակոչվել է Թարգմանչաց՝ ի հիշատակ Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթևի: 1953–ից՝ երկրորդ. վարժարան: Ունի մանկապարտեզ, նախակրթարան: Հայագիտ. առարկաները դասավանդվում են հայ., մյուսները՝ անգլ.: Պահվում է Երուսաղեմի հայոց պատրիարքարանի միջոցներով, ՀԲԸՄ–ի և Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հատկացումներով:

ՍՐԲՈՑ ՀՌԻՓՍԻՄՅԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ, երկսեռ ուս. հաստատություն: Հիմնադրվել է 1922–ին Բեյրութում՝ Անարատ հղության հայ կաթոլիկ քույրերի միաբանության նախաձեռնությամբ: Մինչև 1980–ը՝ իգական: Ուսման տևողությունը՝ 12 տարի, ուսուցումը՝ Լիբանանի պետ. բակալորիայի ծրագրով:

ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՖԵՐԱՀՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ, ԱՄՆ–ում առաջին ամենօրյա հայկ. դպրոցը: Հիմնադրվել է 1964–ին Էնսինոյում՝ Մաթեոս Ֆերահյանի կտակի համաձայն: Ուսման տևողությունը՝ 12 տարի: Ունի նաև մանկապարտեզ, մանկամսուր, նախակրթարան: Ուսուցումը՝ անգլ–ով, հայ. դասավանդվում են հայագիտ. առարկաները, կրոն, հայկ. երգ ու պար: Հրատարակում է տարեգիրք:

ՍՐԲՈՒԹՅՈՒՆ, թեիստ. կրոններում՝ Աստծու էութենական բնութագրիչներից, միջնորդավորված կերպով հատուկ է նաև մարդկանց, առարկաներին, որտեղ առկա է Աստծու ներկայությունը: Հակոտնյան *մեղքն* է:

«ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՍՐԲՈՑ», հին հրեաների համար Երուսաղեմի տաճարի ամենասրբազան մասը, որտեղ պահպանվել են *Մովսեսի* «Պատվիրանները»: Փխբ. իմաստով՝ ամենաթանկը, ամենասրբազանը:

ՍՐԸՆՉԱԿՆԵՐ (Soricidae), կաթնասունների դասի *միջատակերների* կարգի ընտանիք: Ընդգրկում է 26 սեռի մոտ 290 տեսակ: Մկնանման կենդանիներ են՝ կարճ պոչով, երկարացած դնչիկով և փոքր կնճիթաձև բթով: Մարմնի երկ.՝ 3,4–18, պոչինը՝ 1–12 *սմ*, կ. զ.՝ 1–26 *գ*: Գործուն են կլոր տարի, առավելապես՝ մթնշաղին և գիշերը: Սնվում են կենդ. կերով, ձմռանը՝ նաև սերմերով: ՀՀ–ում հանդիպում է 4 սեռի 9 տեսակ՝ գորշատամներ (Սատունինի, Ռադդեի և Վոլնուխինի), սպիտակատամներ (կովկաս. երկարապոչ, պարսկ., հայկ. և Դիննիկի), կուտորաներ կամ ջրասրընչակներ (Շելկովնիկովի կուտորա), բազմատամնավոր սպիտակատամներ (թզուկային սպիտակատամը համաշխ. ֆաունայի կաթնասունների ամենափոքր ներկայացուցիչն է, մարմնի երկ.՝ 3–5 *սմ*): Օգտակար են. ոչնչացնում են վնասատու միջատներին: Առանձին տեսակներ վարակների հարուցչակիրներ են:

ՍՐԻՆԱԳԱՐ, *Շրինագար*, ք. Հնդկաստանի հս–արմ–ում՝ Ջամու և Քաշմիր նահանգի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,08 մլն (2010): Հիմնադրվել է մ. թ. ա. III դ–ում:

ՍՐԻՆԳ, բերդ *Կորճայք* նահանգի Փոքր Աղբակ գվռ–ում: Հիշատակվում է մ. թ. ա. II դ–ից: Միջին դարերում եղել է Վասպուրականի Արծրունիների հվ. ռազմակայանը: Հիշատակվում է նաև *Գագիկ Արծրունու* բերդերի թվում: Հավանաբար ավերվել է սելջուկ. թուրքերի արշավանքների ժամանակ (XII դ–ի 2–րդ կես):

ՍՐԻՆԳ, երկայն. ֆլեյտայի նման երաժշտ. գործիքների ընդհ. անվանումը: Հայում «Ս.» բառը լայնորեն գործածված է Աստվածաշնչի թարգմ–յուններում: Կոմիտասն այդ անվանումը մասնավորեցրել է *ժող. բոլոշ* գործիքի համար:

ՍՐԿՈՒՎԱՆՔ, ճարտ. համալիր Վան քաղ–ից մոտ 20 *կմ* հվ: Ավերվել է 1648–ի երկրաշարժից և հիմնովին վերակառուցվել XVIII դ–ի սկզբին: Ս–ի Սբ Մարինոս եկեղեցին 1 զույգ որմնամույթերով գմբեթավոր դահլիճ է: Պարսպապատ համալիրի արմ. և հվ. կողմերում վանքի խցերն են:

ՍՐՃԵՆԻ, *սուրճ* (Coffea), տորոնազգիների ընտանիքի մշտադալար կամ տերևաթափ թուփ կամ ծառ (բարձր.՝ մինչև 8–10 *մ*): Հայտնի է Ս–ու մոտ 60 տեսակ՝ Աֆրիկայի և Ասիայի արևադարձ. ու մերձարևադարձ. շրջաններում: Մշակում են 4–5 տեսակ: Ամենատարածվածը արաբ. Ս. է (C. arabica), որից ստացվում է ամենարժեքորակ սուրճը (C. mocco): Ս–ու աղացած հատիկներից պատրաստած ըմպելիքները (սուրճերը) կոֆեինի զգալի պարունակության շնորհիվ բարձրացնում են օրգանիզմի առույգությունը (տոնուսը), խթանում գլխուղեղի աշխ–ը, գրգռում նյարդ. համակարգը և բարձրացնում աշխատունակությունը:

ՍՐՄԱՆՑ, Սերմանց, լ–գագաթ Հայկ. լ–աշխարհում՝ Բյուրակն բարձրավանդակի հս–արմ–ում: Բարձր.՝ 3250 *մ*: Հս–արմ. լանջի աղբյուրներից սկզբնավորվում է Արաքս գետը:

ՍՐՆԳԱՀԱՎԵՐ (Bombycillidae), *ճնճղուկանմանների* կարգի թռչունների ընտանիք: Հայտնի է 3 տեսակ, ՀՀ–ում՝ 1՝ սրնգահավը: Պատահական չվահյուր է: ՀՀ–ում առաջին անգամ գրանցվել է 1982–ին Երևանում՝ չուի ճանապարհին: Մարմնի երկ.՝ 18 *սմ*, կ. զ.՝ 60 *գ*: Ապրում է հատապտղատու թփերով հարուստ տարածքներում: Մնվում է հատապտուղներով, անողնաշարներով: Ձմռանը կերակրվում է երամներով:

ՍՐՆԳԵՆԻ, կիպրոս, կեղծհասմիկ, հորտենազգիների ընտանիքի տերևաթափ թփերի, հազվադեպ՝ ծառերի ցեղ: Հայտնի է մոտ 50 տեսակ, ՀՀ–ում՝ 1: Բնափայտից ստանում են սև ներկ: Ս. օգտագործվում է նաև որպես գեղազարդիչ՝ կանաչապատման, և դաշտապաշտպան՝ անտառաշերտի համար:

ՍՐՈՀՈՒՆԳ (Hipericum), **արևքուրիկ**, սրոհունդազգիների ընտանիքի բազմամյա, հազվադեպ՝ միամյա խոտաբույսերի, թփերի, կիսաթփերի ցեղ: Հայտնի է մոտ 400 տեսակ (հիմնականում՝ բարեխառն և մերձարևադարձ. գոտիներում), ՀՀ–ում՝ 11՝ Տավուշի, Լոռու, Սյունիքի և այլ մարզերում: Էլեռնորայի Ս. տեսակը Հայաստանի բնաշխարհիկ է, որը և հայկ. Ս. գրանցված են ՀՀ Կարմիր գրքում: Տերևներն օգտագործում են օղու արտադր–յան մեջ, նաև որպես համեմունք, թեյին փոխարինող միջոց: Շատ տեսակներ դեղաբույս են, գեղազարդիչ:

ՍՐՈՆՅՅԱՆԳԱՄԲՈ, Տիբեթի թագավոր՝ 629–649–ին: Ավարտել է Տիբեթի ցեղերի միավորումը մեկ պետության մեջ (գոյատևել է մինչև IX դ.):

ՍՐՎԱՆԶՏՅԱՆ (Սրվանձտյանց) Գարեգին Ավետիսի (1840–1892), բանասեր–բանահավաք, ազգագրագետ, հաս. գործիչ, խմբ.: Եղել է *«Արծուի Վասպուրական»*–ի թերթի խմբ–ի տեղակալ, 1862–ին՝ Սշո Սբ Կարապետ վանքի ժառանգավորաց վարժարանի տնօրեն–ուսուցիչ, 1863–65–ին՝ *«Արծուիկ Տարօնոյ»* երկշաբաթաթերթի խմբ.: Հեղինակ է «Գրոց ու բրոց» (1874) ավանդությունների ու զրույցների ժող–ի. հավելվածում ներառվել է նաև «Սասնա ծռեր» էպոսի Ս–ի հայտնաբերած ու գրի առած «Սասունցի Դաւիթ կամ Մհէրի դուռ» վերնագրով առաջին պատումը, «Հնոց եւ նորոց...» (1874), «Մանանայ» (1876), «Թորոս Աղբար. Հայաստանի ճամբորդ» (մաս 1, 2, 1879, 1884), «Համով–հոտով» (1884) ավանդությունների ու զրույցների, հանելուկների, առակների ժող–ների, «Շուշան Շաւարշանայ» (1875) դրամատիկ երկի, ընթերցարանների, դասագրքերի:

ՍՐՎԱՆԶՏՅԱՆ Վաղարշակ Միքայելի (1891–1958), կոմպոզիտոր, բանահավաք: *Կոմիտասի* աշակերտներից: ԱՄՆ–ում հիմնադրել է երգչախմբեր, հանդես եկել համերգներով: Հեղինակ է մանկ. օպերաների, նվագախմբային, գործիք., վոկալ և այլ գործերի: Գրառել, մշակել և ուսում–նասիրել է ժող. երգեր: Հրատարակվել են Ս–ի «Հայ երգեր», «Հոգիի ձայներ», «Նոր երգեր», «Հայ պարեր» և այլ ժող–ներ:

ՍՐՎԵԶԻ ՎԱՆՔ, ճարտ. համալիր ՀՀ Տավուշի մարզի Այգեհովիտ գ–ից 3 *կմ* արմ.: Գմբեթավոր դահլիճ տիպի եկեղեցին (XIII դ.) կառուցված է թրծած աղյուսից (արմ. մասը քանդված է): Հս. կողմում միանավ եկեղեցու (XIX դ.) պատերն են:

ՍՐՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ինստիտուտ Երևանի, Լևոն Հովհաննիսյանի անվան, հիմնադրվել

է 1961-ին՝ ՀՀ ԳԱԱ Լ. Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստ-ի սրտաբանության բաժանմունքի (հիմն.՝ 1953) և Ռենտգենաբանության ինստ-ի սրտային վիրաբուժության բաժանմունքի (հիմն.՝ 1958) հիմքի վրա (մինչև 1969-ը՝ կոչվել է Սրտաբանության և սրտային վիրաբուժության ինստ.): 1975-ին ինստ-ի սրտային վիրաբուժության բաժանմունքի հիման վրա կազմակերպվել է Ա. Միքայելյանի անվ. ***վիրաբուժության ինստիտուտը***: 2005-ին վերակազմակերպվել է ՓԲԸ-ի (նախագահ՝ Սամվել Հովհաննիսյան): Ինստ-ում ուսումնասիրվում են սրտամկանի անբավարարության և հետզարգացման մեխանիզմները՝ սրտի ձեռքբերովի արատների ժամանակ: Ինստ-ը, որպես հանրապետության սրտաբան. կենտրոն, իրականացնում է սրտաբան. ծառայության կազմակերպչ., գիտամեթոդ. ղեկավարումը, միաժամանակ հանրապետ. սրտաբան. դիսպանսեր է: Համալրված է ժամանակակից բուժ. սարքավորումներով: Տնօրեններ՝ Կարեն Քյանդրյան, Կաոլեն Ադամյան:

ՍՐՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **կարդիոլոգիա**, բժշկագիտ-յան բաժին. ուսումնասիրում է սիրտանոթ. համակարգի կառուցվածքն ու ֆունկցիաները, սիրտանոթ. հիվանդությունների առաջացման պատճառներն ու մեխանիզմները, մշակում ախտորոշման, բուժման և կանխարգելման եղանակներ:

ՍՐՏԱԳԻԲ, **կարդիոգրամմա**, **սրտագրություն**, հատուկ գործիքներով (էլեկտրասրտագրիչ, բալիստասրտագրիչ ևն) սրտի գործունեության գրանցման ժամանակ թղթի կամ լուսանկարչ. ժապավենի վրա ստացված կորագիծը:

ՍՐՏԱՄԿԱՆ, **միոկարդ** (< ***միո***... և հուն.՝ kardia – սիրտ), սրտի զանգվածի հիմն. մասը կազմող մկան. հյուսվածքը: Փորոքների և նախասրտերի Ս-ի ռիթմիկ, համաձայնեցված կծկումներն ապահովում են սրտի հաղորդիչ համակարգով:

ՍՐՏԱՄԿԱՆԻ ԲՈՐԲՈՔԻՄ, **միոկարդիտ**, սրտամկանի բորբոք., առավելապես՝ վարակական, ալերգ. բնույթի հիվանդությունների խումբ (օր.՝ ռևմատիզմի, քութեշի ժամանակ): Դրսևորվում է հևոցով, սրտխփոցով, սրտի ցավերով, անոիթմությամբ:

ՍՐՏԱՄԿԱՆԻ ԻՆՖԱՐԿՏ, սիրտանոթ. հիվանդություն. բնորոշվում է սրտամկանում մեռուկացման օջախի առաջացմամբ՝ արյան պակային շրջանառության խանգարման (աթերոսկլերոզ, թրոմբոզ, պսակ. զարկերակների կծկանք) հետևանքով: Ս. ի-ի զարգացմանը (հիմնականում՝ կրծք. հեղձուկի նոպաների ֆոնի վրա) նպաստում են հիպերտոնիկ հիվանդությունը, շաքար. դիաբետը, ճարպակալումը, ծխելը, սակավաշարժությունը, նյարդ. գերլարվածությունը: Հիմն. դրսևորումներն են կրծքավանդակի կենտրոնում կամ ձախ կեսում սուր սեղմող ցավերի երկարատև նոպաները, վախի, շնչարգելության զգացողությունները, ջերմաստիճանի բարձրացումը, արյան և էլեկտրասրտագրի փոփոխությունները: Հարկավոր է հիվանդներին անհապաղ հոսպիտալացնել:

ՍՐՏԱՄԿԱՆԻ ՄՆՈՒՑԱԽԱՆԳԱՐՈՒՄ, **միոկարդիոդիստրոֆիա**, սրտամկանի ոչ բորբոք. ախտահարումների հավաք. անվանումը. բնորոշվում է հետադարձելի կենսաքիմ. խանգարումներով, էլեկտրասրտագրի փոփոխություններով, հնարավոր է՝ նաև սրտային անբավարարության զարգացում:

ՍՐՏԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, սրտամկանի կծկողականության թուլացում՝ նրա գերհոգնածության (օր.՝ սրտի արատների, հիպերտոնիայի), արյունամատակարարման խանգարման (սրտամկանի ինֆարկտի) և այլ դեպքերում: Ախտանշանները՝ թոքերում և արյան մեծ շրջանառությունում արյան կանգ, հևոց, այտուցներ, լյարդի մեծացում, ջրգողություն: Տարբերում են սուր (սրտային հեղձուկ) և քրոնիկ. Ս. ա., որի ուշ փուլերում առաջանում են նյութափոխանակության անվերադարձ խանգարումներ և ձևաբան. փոփոխություններ տարբեր օրգաններում:

ՍՐՏԱՅԻՆ ԳԼԻԿՈՋԻԴՆԵՐ, բուս. ծագման նյութեր, որոնք դասվում են գլիկոզիդների շարքը և ընտրող. ազդեցություն ունեն սրտամկանի վրա, որի կարևորագույն դրսևորումներից է սրտամկանի կծկումների ուժեղացումը, օգտագործում են հիմնականում ***սրտային անբավարարության*** ժամանակ:

ՍՐՏԱՆՄԱՆՆԵՐ (Cardiidae), երկփեղկանիների դասի փափկամարմինների ընտանիք: Խեցին սրտանման է, կողավոր, երկ.՝ մինչև 10 *սմ*: Հայտնի է մոտ 250 տեսակ՝ տարածված լայնորեն՝ ծովերում և աղի ջրամբարներում: Որոշ տեսակներ ունեն արդյունագործ. նշանակություն (ուտելի են):

ՍՐՏԱՊԱՐԿ, **սրտի շապիկ**, **պերիկարդ** (< ***պերի***... և հուն.՝ cardia – ***սիրտ***), պինդ շարակցահյուսվածք. երկշերտ պարկ, որը պարփակում է սիրտը:

ՍՐՏԱՊԱՐԿԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ, **պերիկարդիտ**, լինում է սրտապարկի խոռոչում՝ առանց արտաքիրտի կուտակման (չոր բորբոքում) և կուտակումով (թաց բորբոքում): Առաջանում է տուբերկուլոզի, միզարյունության, սրտամկանի ինֆարկտի և այլ հիվանդությունների դեպքերում:

ՍՐՏԱՐԴ, **կարդիոիդ** (< հուն. kardia – սիրտ և eidos – տեսք), հարթ կոր (նկ.), որը գծում է շրջանագծի M կետը, երբ տվյալ շրջանագիծը գլորվում է (առանց սահքի) նույն շառավղով, իրեն արտաքինից հպված մեկ այլ շրջանագծի շուրջ: 4-րդ կարգի հանրահաշվ. կոր է՝ ***էպիցիկլոիդ***:

ՍՐՏԻ ԱՂՄՈՒԿՆԵՐ, ձայն. բացառիկ երևույթ՝ սրտի արատների, սրտամկանի փոփոխությունների, արյան բաղադրության խանգարումների (օր.՝ սակավարյունության) ժամանակ արյան հոսքի խոչընդոտման դեպքերում: Աղմուկի առակայությունը, նրա տեղակայումը, բնույթը և առաջացման պահը (սիստոլային, դիաստոլային) օգնում են սրտի հիվանդության ախտորոշմանը:

ՍՐՏԻ ԱՐԱՏՆԵՐ, սրտի կառուցվածքի բնածին կամ ձեռքբերովի փոփոխություններ, որոնք խոչընդոտում են արյան բնականոն հոսքը: Ռևմատիզմով (հազվադեպ՝ սեպտիկ էնդոկարդիտով, սիֆիլիսով, աթերոսկլերոզով) պայմանավորված Ս. ա. կոչվում են ձեռքբերովի: Հնարավոր են երկփեղկ փականի, աորտային, երկփեղկ-աորտային և այլ արատներ՝ փականների ոչ լրիվ միակցումը (փականների անբավարարություն) և կամ ներսրտային բացվածքի նեղացումը (ստենոզ): Ս. ա. երկար ժամանակ կարող են ընթանալ առանց ախտանշանի, իսկ սրտամկանի հյուծման ժամանակ առաջանում է ***սրտային անբավարարություն***: Սրտի և խոշոր անոթների զարգացման անկանոնությունները (սրտի բնածին արատներ) պայմանավորված են հիմնականում սրտի միջնորմի ոչ ճիշտ ներարգանդ. ձևավորմամբ (օր.՝ միջնախասրտային միջնորմի չսերտաճում) կամ ծնվելուց հետո արյան ներարգանդ. շրջանառության առանձնահատկությունների պահպանմամբ (օր.՝ բաց բոտալյան ծորան): Բնածին արատ ունեցողներին բնորոշ են հիվանդի ֆիզ. զարգացման կասեցումը, կապտախտը (կապույտ արատներ), հևոցը, էրիթրոցիտոզը, սրտի սահմանների փոփոխությունները, ***սրտի աղմուկների*** առաջացումը: Բուժումը՝ վիրաբուժական:

ՍՐՏԻ ԻՇԵՄԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, սիրտանոթ. հիվանդություն՝ պայմանավորված պսակային շրջանառության խանգարմամբ և սրտի իշեմիայով: Ս. ի. հ-յան ձևերից են կրծքային հեղձուկը, սրտամկանի ինֆարկտը, աթերոսկլերոզային կարդիոսկլերոզը:

ՍՐՏԻ ՇՐՋԱՔԱԿՈՒՄ, սրտի ***անտիթմություն***՝ պայմանավորված սրտամկանում կծկող. ազդակների հաղորդման խանգարմամբ՝ ռևմատիզմի, կարդիոսկլերոզի, թունավորումների և այլ դեպքերում: Կարող է լինել ժամանակավոր և մշտ., մասնակի և լրիվ:

ՍՐՏԻ ՏՈՆԵՐ, ձայն. բացառիկ երևույթ՝ կապված սրտամկանի կծկման ժամանակ փականների աղմուկով փակվելու և փականների ու սրտամկանի տատանող. շարժումների հետ: Լսման ժամանակ սովորաբար որոշում են 2 տոն՝ 1-ինը՝ սիստոլայի (սիստոլային), 2-րդը՝ դիաստոլայի (դիաստոլային) ժամանակ. դրանց փոփոխությունները բնորոշ են սրտի արատներին, հիպերտոնիկ հիվանդությանը և որոշ այլ հիվանդությունների:

ՍՐՈՒՆԴ, ցամաք. ողնաշարավորների հետին վերջույթի (մարդկանց՝ ոտքերի) մաս՝ ազդրի և ոտնաթաթի միջև ընկած հատվածը: Ս-ի կմախքը մեծ և փոքր ոլոքներն են: Հողվածոտանիների Ս. ոտքի հատվածիկ է՝ ազդրի (կամ ծնկային հատվածիկի) և թաթիկի միջև:

ՍՑԵՆԱՐ (իտալ.՝ scenario), 1. պիեսի բովանդակության հակիրճ շարադրանքը (առանց երկխոսությունների և մենախոսությունների), որտեղ նշվում են գործողության հիմն. պահերը, գործող անձանց բեմ դուրս գալը, ընդմիջարկվող համարները: Ս-ով ստեղծվում են թատեր., բալետային և օպերային, մասսայական հանդիսախաղերի բեմադրությունները: 2. Գր. ստեղծագործություն, որի հիման վրա նկարահանվում են կինոնկարներ և հեռուստատեսային հաղորդումներ:

ՍՑԻՆԿՆԵՐ (Scincidae), ***մողեսների*** ընտանիք: Հայտնի է շուրջ 124 սեռի 1305 տեսակ, ՀՀ-ում՝ 3 սեռի 4 տեսակ (զոլավոր մերկաչք, Զեռնովի մերկաչք, ոսկեգույն տրախիլեպիս և երկարառոտ Ս.): Բնորոշվում են հարթ (ձկնանման), փայլուն թեփուկավորմամբ, որոնց տակ ոսկր. թիթեղները սերտաճելով առաջացնում են համեմատաբար ամուր զրահանման ծածկույթ: Կան զարգացած վերջույթներով, անոտ, շարժուն և միաձուլված կոպերով տեսակներ:

ՍՑԻՆՏԻԼՅԱՑԻԱ (լատ.՝ scintillatio – կայծկլտում), կարճատև (10^{-4}–10^{-9} *վ* տևողութ-

յան) լուս. բռնկում (լյումինեսցենցիա), որն առաջանում է սցինտիլյատորներում՝ իոնացնող ճառագայթների (օր.՝ արագ էլեկտրոնների) ազդեցությամբ:

ՍՅԻՖՈՒԴՆԵՐ (Scyphozoa), **սցիֆոզոաներ**, *աղեխորշավորների* տիպի ծով. անողնաշարների դաս: Մեդուզաների ձվերից դուրս են գալիս թրթուրներ, որոնք կերպափոխվում են պոլիպների (սցիֆիստոմներ), վերջիններիս լայնական կիսման ճանապարհով առաջանում են թրթուրներ, որոնցից զարգանում են սեռ. սերնդի առանձնյակներ (սցիֆոմեդուզաներ): Հայտնի է 200 տեսակ՝ տարածված գլխավորապես Համաշխ. օվկ-ում: Ունեն 4 կարգ՝ սկավառակամեդուզաներ, արմատաբերաններ, պսակամեդուզաներ, ստավրամեդուզաներ: Որոշ Ս–ի մաշկին հպվելիս կարող են առաջանալ ցավ և «այրուցքներ»: Ավստրալիայի հս. ափերին ապրող խիբոդրոֆուս սեռի սցիֆոմեդուզայի թույնից հայտնի են մահվան դեպքեր:

ՍՈՒԱՅԳԵՐՏ (Swigert) Ջոն Լեոնարդ (1931–1982), ամերիկացի աստղագնաց, փորձարկող օդաչու: Թռել է «Ապոլոն-13» տիեզերանավով (1970), որը պիտի վայրէջք կատարեր Լուսնի վրա, բայց ծրագիրն ընդհատվել է: Թռիչքի ընդհ. տևողությունը՝ 5 օր 22 *ժ* 54 *ր*:

ՍՈՒԲԱՇԻԵՎ Արսեն Վահանի (ծ. 1943), ֆիզիկոս-տեսաբան: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1984), պրոֆ. (1986, Ս. Պետերբուրգի տեխ. համալսարան): Վահան ***Սուրաշիևի*** որդին: Աշխ-ները վերաբերում են տեղային և քվազիտեղային տատանումներով բյուրեղների օպտիկ. հատկություններին, հետազոտել է մետաղներում և կիսահաղորդիչներում լույսի ցրման, էլեկտրոնախոռոչ. կաթիլների երևույթները: «Կիսահաղորդիչների ֆիզիկա և տեխնիկա» (ռուս.) հանդեսի պատ. քարտուղար (1995):

ՍՈՒԲԱՇԻԵՎ Վահան Գասպարի (Կասպարի, 1916–1989), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1968), պրոֆ. (1970): Արսեն ***Սուրաշիևի*** հայրը: ԽՍՀՄ վաստ. գյուտարար: Մասնակցել է ԽՍՀՄ-ում առաջին գերմանիումային p–n անցում. տրանզիստորների ստեղծմանը, սիլիցիումի միաբյուրեղների ստացմանը և սիլիցիում. արեգակն. մարտկոցների մշակմանը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1968), «Պատվո նշան» շքանշան (1961):

ՍՈՒԲԱՐԻ, խուռիտ. լեզուներին պատկանող ասիական լեզու: Խոսել են սուբարները (մ. թ. ա. III հզ-ամյակ–I հզ-ամյակ):

ՍՈՒԲԼԻՄԱՑԻԱ, **սուբլիմում** (լատ.՝ sublimatio – վսեմացում, sublimare –բարձրացնել), 1. հոգեկան հուզմունքից բխող հակումների էներգիան վերափոխող և անձին հաս. գործունեության կամ ստեղծագործ. աշխ-ի մղող գործընթաց: Հասկացությունը ներմուծել է Զ. ***Ֆրեյդը*** (1900), որը Ս. դիտարկել է իբրև հակումների (լիբիդո) փոխակերպման տեսակ, որը համադիր է արտամղմանը:

2. **Ցնդում**, նյութի անցումը պինդ վիճակից գազայինի՝ շրջանցելով հեղուկ ֆազը (1-ին կարգի ֆազ. անցում): Ս-ի համար նյութին պետք է էներգիա հաղորդել, որը կոչվում է Ս-ի ջերմություն: Տեխնիկայում կիրառում են պինդ նյութերը խառնուկներից մաքրելու համար:

ՍՈՒԲՅԵԿՏ (լատ.՝ subjectus – ներքնադիր, հիմնադիր), ***օբյեկտին*** ուղղված առարկայական-պրակտիկ գործունեության և ճանաչողության (անհատ կամ սոցիալ. խումբ) կրողը, ակտիվության աղբյուրը:

ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔ, ֆիզ. կամ իրավաբ. անձի՝ օրենքով ապահովված հնարավորությունն իրականացնելու իր իրավունքը որոշակի գործողություններ կատարելու կամ այլ անձանցից որոշակի վարքագիծ պահանջելու միջոցով:

ՍՈՒԲՍԻԴԻԱ (լատ.՝ subsidium – օգնություն, աջակցություն), դրամ. միջոցներ, որոնք իշխանության տարածք. մարմիններին, ֆիզ. կամ իրավաբ. անձանց տրվում են նպատակ. ծախսերի բաժնային ֆինանսավորման պայմանով: Ս. բյուջետ. կարգավորման միջոց է:

ՍՈՒԲՍՏԱՆՑ (լատ.՝ substantia – բուն էությունը), օբյեկտիվ ռեալություն, մատերիան իր շարժման ձևերի միասնության մեջ: Ս. նշանակում է աշխարհի մեջ եղած վերացականը, ընդհանուրը, հաստատունը, որը գոյություն ունի ինքն իրենով՝ անկախ որևէ այլ բանից:

ՍՈՒԲՎԵՆՑԻԱ (լատ.՝ subvenio – օգնության հասնել), դրամ. միջոցներ, որոնք անհատույց տրվում են որոշակի նպատակ. ծախսերի համար և վերադարձվում են դրանց իրացման խախտման դեպքում:

ՍՈՒԴԱԵՎ Ալեքսանդր Իվանովիչ (1912–1946), ինքնաշխատ զենքի ռուս կոնստրուկտոր: Ստեղծել է ատրճանակ-գնդացիր (ՊՊՏ) ևն: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943, հանձնվել է 1946–ին):

ՍՈՒԴԱԿ (Sander), ***պերկեսակերպների*** կարգի ձուկ: Երկ. սովորաբար՝ 60–70 *սմ* (մինչև 1,3 *մ*), կ. զ.՝ 2–4 (երբեմն՝ մինչև 20) *կգ*: Ապրում է Բալթիկ, Կասպից և Արալյան ծովերի քաղցրահամ և աղիավուն ջրերում:

ՍՈՒԴԱԿՈՎ Իլյա Յակովլևիչ (1890–1969), ռուս. ռեժ., մանկավարժ: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1938): Կ. Ն. ***Ելանսկայայի*** ամուսինը: 1937–44–ին՝ Փոքր թատրոնի գլխ. ռեժ., 1948–52–ին՝ Տրանսպորտի կենտր. թատրոնի ղեկ.: Բեմադրել է Մ. Ա. Բուլգակովի «Տուրբինների օրերը» (1926), Ա. Ե. Կոռնեյչուկի «Պլատոն Կրեչետ» (1935), Կ. Գուցկովի «Ուրիել Ակոստա» (1940) և այլ գործեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942, 1951):

ՍՈՒԴԱՆ, **Սուդանի Հանրապետություն** (արաբ.՝ Ջումհուրիյաթ աս-Սուդան), պետություն Արլ. Աֆրիկայում: Սահմանակից է Եգիպտոսին, Էրիթրեային, Եթովպիային, Հվ. Սուդանին, Կենտրոնաաֆրիկ. Հանրապետությանը, Չադին և Լիբիային: Տարածքը՝ 1,865 մլն *կմ*², բն.՝ 40 մլն (2015): Մայրաքաղաքը՝ Խարթում: Պետ. լեզուն՝ արաբ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը: Հավատացյալների մեծ մասը մահմեդական է: Բաժանված է 16 վարչ. նահանգ-ների: Անդամակցում է ՄԱԿ-ին, Աֆրիկ. միությանը: Տնտ-յան հիմքը նավթարդ-յունն է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 2,3 հզ. ԱՄՆ դոլար է (2005): Արտահանում է նավթ և նավթամթերք, խեկ-ներ, բամբակ, գետնանուշ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ սուդանյան ֆունտ:

Մ. թ. ա. IV–III հզ-ամյակներում Ս-ի տարածքում առաջացել է ժամանակի եգիպտ. մշակույթին նման մշակույթ: Մ. թ. ա. III–II հզ-ամյակների սահմանին կազմավորվել է Քուշ պետությունը, V–IV դդ-ում՝ Մերոիտյան թագավորությունը: Մ. թ. IV դ-ից Ս-ի տարածքում առաջացել են Սուկուրա, Ալվա, Նորատիա, Նուբիա քրիստ. պետությունները: VII դ-ում, Եգիպտոսի նվաճումից հետո, սկսվել է արաբների ներթափանցումը նաև Սուդան, և XVI դ-ում կազմավորվել են Սեննար, Դարֆուրյան սուլթանություն ու այլ մահմեդ. պետություններ: 1820–22–ին Ս-ի տարածքը գրավել է եգիպտ. տիրակալ Մուհամմեդ Ալին, իսկ 1860-ական թթ–ից սկսվել է Մեծ Բրիտանիայի ներթափանցումը: Մահդիականների ապստամբության ժամանակ (1881–85) Մահդի Սուդանցու գլխավորությամբ կազմավորվել է կրոնապետություն: 1899–1955–ին եղել է Մեծ Բրիտանիայի գաղութը: Անկախություն է հռչակել 1956–ին: 1972–ին երկրի հվ–ն ստացել է ինքնավարություն, որով ավարտվել է 17–ամյա պատերազմը: 1980–ական թթ–ի սկզբին, երկրում մահմեդ. օրենսդրության պարտադրման պատճառով, վերսկսվել է քաղաքաց. պատերազմը հվ–ում, 1985–ին տապալվել է Զ. Նիմեյրիի վարչակարգը, 1986–ին ձևավորվել է կոալիցիոն կառ–յուն՝ Ումմա քաղ. կուս-յան (հիմն.՝ 1945, ղեկ.՝ Ս. ալ–Սահդիի՝ Սահդի Սուդանցու թոռը) գլխավորությամբ, իսկ 1989–ին երկրում տեղի է ունեցել ռազմ. հեղաշրջում: Իշխանության է եկել գնդ. Օ. Խ. ալ–Բաշիրը, որը երկրում հաստատել է բռնապետություն և վարել հաս. կյանքի մահմեդականացման քաղ-յուն: 2005–ին կառավար. ուժերի և Հվ. Ս-ի ապստամբների միջև կնքվել է հրադադարի համաձայնագիր՝ երկրի հվ–ի կարգավիճակի վերաբերյալ հանրաքվեի անցկացման մասին: 2011–ի հանրաքվեով Հվ. Ս. հռչակվել է անկախ պետություն: 2003–ից Ս–ի արմ. մասում ևս անջատող. շարժումներ են սկսվել, տեղի են ունենում բախումներ (Դարֆուրյան հակամարտություն): 2007–ին այդ շրջան են ուղարկվել ՄԱԿ–ի և Աֆրիկ. միության խաղաղապահ զորքեր:

Ս–ում հայերը հաստատվել են XIX դ–ի վերջին: Անկախացումից հետո երկրում կանոնավոր գործել են ազգ. կառույցները՝ եկեղեցի, դպրոց, բարեգործ., մարզ., երիտասարդ. և այլ կազմ-յուններ: Ներկայում հայեր գրեթե չեն մնացել, ռազմ. հեղաշրջումից հետո նրանք արտագաղթել են հիմնականում Մեծ Բրիտանիա, Կանադա, ԱՄՆ, Ավստրալիա:

ՍՈՒԴԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ (դինկա լեզվի՝ Wöuwic Thudan), պետություն Արլ. Աֆրիկայում: Սահմանակից է Սուդանին, Եթովպիային, Քենիային, Ուգանդային, Կոնգոյի ԺՀ–ին, Կենտրոնաաֆրիկ. Հանրապետությանը: Տարածքը՝ 640 հզ. *կմ*², բն.՝ 8,3 մլն (2011): Մայրաքաղաքը՝ ***Ջուբա***: Պաշտոն. լեզուն՝ անգլ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Հավատացյալների մեծ մասը քրիստոնյա է, կան նաև ավանդ. հավատալիքների հետևորդներ: Բաժանված է 10 վարչ. նահանգ-ների: Անդամակցում է ՄԱԿ-ին, Աֆրիկ. միությանը: Տնտ-յան հիմքը նավթարդ-յունն է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 2,3 հզ. ԱՄՆ դոլար է (2005): Արտահանում է նավթ, բնափայտ, թուղթ, թաղանթանյութ, գետնանուշ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք,

շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ հարավսուդանյան ֆունտ:

1947–ից զինված պայքարել է անկախության համար: 1972–83-ին և 2005–11-ին՝ ինքնավար մարզ Սուդանի Հանրապետության կազմում: Սուդանի Կառ-յան և հարավսուդանյան ապստամբների միջև կնքված (2005) խաղաղության համաձայնագրով 2011-ին անցկացվել է հանրաքվե, որով Ս. Հ. հռչակվել է անկախ պետություն: Ճանաչել են աշխարհի առաջատար պետությունները:

ՍՈՒԴԱՆՑԻՆԵՐ, Սուդանի արաբներ, Սուդանի հիմն. բնակչությունը: Ընդհ. թիվը՝ մոտ 23 մլն (2010): Ապրում են նաև Եգիպտոսում, Լիբիայում, Եմենում ևն: Լեզուն՝ արաբ.: Հիմնականում սուննի մահմեդական են:

ՍՈՒԴԵՏՆԵՐ, լ-ներ Կենտր. Եվրոպայում՝ Գերմանիայի, Լեհաստանի և Չեխիայի տարածքում: Երկ. հս–արմ–ից հվ–արլ.՝ շուրջ 310 *կմ*: Բարձր.՝ մինչև 1602 *մ* (Մսեժկա լ.): Բաժանվում են Արմ., Միջին և Արլ. Ս-ի:

ՍՈՒԴԵՑ Վլադիմիր Ալեքսանդրովիչ (1904–1981), խորհրդ. զորապետ, ավիացիայի մարշալ (1955): ԽՄ հերոս (1945): ՀՄՊ-ի ժամանակ՝ ավիացիոն կորպուսի և օդ. բանակի հրամ.: 1962–66-ին՝ երկրի ՀՕՊ զորքերի գլխ. հրամ., ԽՍՀՄ ՊՆ տեղակալ:

ՍՈՒԵԶ, ք. Եգիպտոսում, համանուն մուհաֆազի վարչ. կենտրոնը, նվինգստ Կարմիր ծովի ափին: Բն.՝ 547 հզ. (2010): Կան նավթավերամշակման և նավթաքիմ. արդ-յան խոշոր ձեռն-ներ:


ՍՈՒԵԶԻ ՋՐԱՆՑՔ, Միջերկր. ծովը Կարմիր ծովին միացնող նավարկելի արհեստ. ջրանցք Եգիպտոսում: Փորվել է 1859–69-ին: Միջերկր. ծովը Հնդ. օվկ-ին կապող ամենակարճ ջր. ճանապարհն է: Աֆրիկան Ասիայից բաժանող պայման. սահմանն է: Գլխ. նվինգստ-ները՝ Պորտ Սաիդ (Միջերկր. ծովի ափին), Սուեզ (Կարմիր ծովի ափին):

ՍՈՒՋԱԲԱԴԵՐ (Netta), *բադերի* ընտանիքի ջրլող թռչունների սեռ: Հայտնի է 22 տեսակ՝ հիմնականում Խաղաղ և Հս. սառուցյալ օվկ-ների ափերին ու Ատլանտ. օվկ-ի հս. մասերում: 1 տեսակ՝ անթև թանձրահավը, անհետացել է: ՀՀ-ում տարածված է 5 տեսակ՝ կարմրագլուխ, կարմրակտուց, սպիտակաաչք, փուփուլավոր և ծով. Ս.: Մարմնի երկ.՝ 15–50 *սմ*: Լավ լողում են և սուզվում:

ՍՈՒՋԱԿ (Podicipedidae), սուզականմանների կարգի ջրլող թռչունների ընտանիք: Հայտնի է 21 տեսակ, ՀՀ-ում՝ 5 (մեծ, մոխրաայտ, փոքր, կարմրավիզ, սևավիզ Ս.): Երկ.՝ 23 (փոքր Ս.) – 60 (մեծ Ս.) *սմ*: Ապրում են քաղցրահամ ջրամբարներում, կարող են ծառայել որպես պետիցիդների և ծանր մետաղների աղերով դրանց աղտոտվածության կենսբ. ցուցիչ: Որոշ Ս-ի կաշին մթերում են («թռչունի մորթի»), միսը սննդի համար պիտանի չէ: 5 տեսակ գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՍՈՒՋԱՀԱՎԵՐ (Gaviidae), սուզահավանմանների կարգի ջրլող թռչունների ընտանիք: Երկ.՝ մինչև 1 *մ*: Հայտնի է 5 տեսակ: Բնադրում են Եվրոպայի, Հս. Ասիայի և Հս. Ամերիկայի քաղցրահամ լճերում (հիմնականում՝ տունդրայում և անտառատունդրայում): Մնվում են ձկներով: Կաշին մթերում են («թռչունի մորթի»):

ՍՈՒՋԱՆԱՎ, *նավ*, որը կարող է ռազմ. բնույթի խնդիրներ լուծել նաև ստորջրյա պայմաններում: Ս-երի կառուցումն սկսվել է XIX դ-ի վերջ–XX դ-ի սկզբին: Ժամանակակից Ս-երը զինված են բալիստիկ և թևավոր հրթիռներով, ջրականներով, ականներով, ունեն դիզել. կամ ատոմ. էներգետիկ. սարքավորումներ: Ատոմ. Ս-երը կարող են մինչև մի քանի ամիս մնալ ստորջրյա լողարկման մեջ և շարժվել մոտ 45 հանգույց (88,3 *կմ/ժ*) արագությամբ: Կան ծովերի գիտ. ուսումնասիրության համար սարքավորված Ս-եր:



«Տրայդենտ» (ԱՄՆ) ատոմական սուզանավի սխեման. 1. հետին հրթիռային հատվածամաս, 2. ղեկապեփի խցիկ, 3. գլխավոր հրամանատարական կետ, 4. առջևի հրթիռային հատվածամաս, 5. անձնակազմի բնակելի տարածք, 6. սպաների նավախցեր, 7. հրթիռների արձակման կառավարման համակարգ, 8. օժանդակ սարքավորումների և էլեկտրաանուցման վթարային հատված, 9. ընդհանուր նավասենյակ, 10. գլխավոր էներգետիկ. սարքավորման հատվածամաս

ՍՈՒԼԱ (Sula), կղզիների խումբ Մալայան կղզեխմբում (Ինդոնեզիա)՝ Սուլավեսի կղզուց արլ.: Գերակշռում են ցածր լեռները (մինչև 1157 *մ*) և բլրոտ հարթավայրերը: Տարածքը՝ 4,8 հզ. *կմ²*, բն.՝ 132 հզ. (2010): Տարածված են խոնավ արևադարձ. անտառները: Գլխ. նվինգստ-ը՝ Սանանա (համանուն կղզում):

ՍՈՒԼԱՎԵՍԻ (Sulawesi), 1. **Ցելեբես (**Celebes), կղզի Մալայան կղզեխմբում (Ինդոնեզիա): Տարածքը՝ 170 հզ. *կմ²*, բն.՝ 18,5 մլն (2014): Բարձր.՝ մինչև 3440 *մ*: Կան գործող հրաբուխներ (Կլարատ և Սպուտան): Տարածված են խոնավ արևադարձ. անտառները, սավաննաները: Գլխ. նվինգստ-ները՝ Ուջունգպանդանգ (Մակասար), Մանասո: 2. **Ցելեբեսի ծով,** Խաղաղ օվկ-ում՝ Սուլավեսի, Կալիմանտան, Մինդանաո, Սանգիհե կղզիների և Սուլու կղզեխմբի միջև: Մակերեսը՝ 453 հզ. *կմ²*, խոր.՝ մինչև 5914 *մ*: Նվինգստ-ները՝ Մանադո (Վենանգ, Սուլավեսի կղզի), Տարական (Տարական կղզում):

ՍՈՒԼԵՄ, գետ ՀՀ Վայոց ձորի մարզում, Եղեգիսի աջ վտակը: Սկիզբ է առնում Վարդենիսի լ–շղթայի հվ. լանջերից: Երկ.՝ 22 *կմ*, ավազանը՝ 144 *կմ²*: Ավազանում տեղատարափ անձրևներից առաջանում են սելավներ: Ավերիչ սելավ եղել է 1969-ի ապրիլի 1-ին, որը ողողել է 10 *հա* հողատարածք, ճանապարհներ, քշել տարել է անասուններ, մեղվափեթակներ, քանդել ջերմոցը, ջրաչափ կայանը ևն: Ս-ի հունի առանձին հատվածներում կառուցված են կամրջ. անցումներ և ափապաշտպան պատնեշներ:

ՍՈՒԼԵՅՄԱՆ I ԿԱՆՈՒՆԻ (Süleyman I Kanuni) (Սուլեյման Օրենսդիր, 1494 և 1496-ի միջև–1566), թուրք սուլթան՝ 1520–1566-ին: Նրա օրոք Օսմ. կայսրությունը հասել է քաղ. հզորության գագաթնակետին: Կազմվել են օրենսգրքեր (վարչ., ֆինանս. ևն): Նվաճել է Հունգ. թագավորության մի մասը, Միջագետքը, Արաբիան, Տրիպոլիի և Ալժիրի տարածքները: 1555-ին Պարսկաստանի հետ կնքած պայմանագրով Հայաստանը և Վրաստանը բաժանվել են Թուրքիայի և Պարսկաստանի միջև:

ՍՈՒԼԵՅՄԵՆՈՎ Օլժաս Օմարովիչ (ծ. 1936), ղազախ գրող, հաս. գործիչ: Ղազախստանի աշխ. հերոս (1990): Ժող. գրող (1990): Գրում է ռուս.: Հեղինակ է «Երկիր, խոնարհվիր մարդուն» (1961), «Արևային գիշերներ» (1962), «Կավե գիրք» (1969) փիլ., քնար. բանաստեղծությունների ու պոեմների, «Սպիտակ գետերի վրա» (1970) բանաստեղծությունների ու արձակ գործերի ժող-ների, «Ազը և Ես» (1975) պատմափիլ. էսսեի, «Նամակի լեզուն» (1998), «Թյուրքերը նախապատմական ժամանակներում» (2002) հետազոտությունների, նաև թյուրքագիտ-յանը վերաբերող աշխ-ների, կինոսցենարների:

ՀամԼԿԵՄ (1967), Ղազախ. ԽՍՀ Պետ. (1973), Թուրքիայի միջազգ. (2003) մրց-ներ:

ՍՈՒԼԵՐԺԻՑԿԻ Լեոպոլդ Անտոնովիչ (1872–1916), ռուս. թատեր. և հաս. գործիչ, ռեժ.: ՄԳԹ-ի 1-ին ստուդիայի հիմնադիր-ղեկ-ներից: Աշակերտներից են Եվգենի Վախթանգովը և ուր.: Նրա հետ աշխատել են Գեորգի Բուրջալովը, Սուրեն Խաչատրյանը:

ՍՈՒԼԹԱՆ (արաբ., թուրք. – բառացի՝ իշխան, տիրակալ), մահմեդ. տիրակալի աշխարհիկ տիտղոս (օր.՝ Օսմ. կայսրությունում, Օմանում), ինչպես նաև Արմ. Աֆրիկայի մահմեդ. երկրների ազնվատոհմիկները, Հվ. Արաբիայի որոշ ցեղ. առաջնորդներ:

ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՀԱՄՄԵԴ (1470-ական թթ.–մոտ 1555), պարսիկ մանրանկարիչ: Ձեռագրերի նկարազարդումները (Ֆիրդուսու «Շահնամե», 1524-ի և 1529-ի միջև, Նիզամու «Խամսե», 1539–43, ևն) աչքի են ընկնում նուրբ ներդաշնակությամբ և գունեղությամբ:

ՍՈՒԼԹԱՆ ՎԵԼԵԴ (Sultan Velet) Մուհամմեդ Բեհաեդդին (1226–1312), թուրք բանաստեղծ, սուֆիական: Ջ. *Ռումիի* որդին: Ապրել է Թուրքիայում: Գրել է ֆարս.: Հեղինակ է քնար. բանաստեղծությունների, «Վելեդի գիրքը» (1301) պոեմի, որտեղ ներառել է թյուրք. բարբառով գրված հատվածներ (առաջին ճշգրիտ թվագրված թուրք. բանաստեղծությունները):

ՍՈՒԼԹԱՆԻԿՆԵՐ, *պերկեսակերպների* կարգի ձկների սեռ: Երկ.՝ մինչև 30 *սմ*: Հայտնի է 4 տեսակ՝ Ատլանտ. օվկ-ի ավազանում, 1 տեսակը՝ Սև և Ազովի ծովերում: Արդյունագործ. արժեքավոր ձուկ է:

ՍՈՒԼԹԱՆՅԱՆ Տիգրան Լևոնի (ծ. 1957), սիրտանոթ. վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (1997): Աշխ-ները վերաբերում են տարածուն աթերոսկլերոզի վիրաբուժության,

երակ. համակարգի հիվանդությունների դեպքում պլաստիկ միջամտությունների, երակ. թրոմբոէմբոլիաների կանխարգելման և բուժման խնդիրներին:

ՍՈՒԼԹԱՆՇԱՀ Անանիա Պավելի (1832–1898), հաս. և մշակույթի գործիչ, բժիշկ: 1859-ին «Հիւսիսափայլի» №10 ամսատետրակում տպագրվել է Ս-ի «Հայոց ազգի լուսաւորիչքը» պիեսը (Մ. Ֆեդորովի «Դաստիարակներ» կատակերգության փոխադրությունն է):

ՍՈՒԼԹԱՆՇԱՀ ԱԲԳԱՐՅԱՆ ԹՈՒԽԱԹԵՑԻ, Սուլթան (մոտ 1550–մ. թ. անհտ), տպագրիչ, հաս., կրոն. գործիչ: 1562-ին հոր՝ ***Աբգար Թոխաթեցու*** հետ Սեբաստիայից մեկնել է Հռոմ: Պիոս IV պապը նրան որդեգրել է և կնքել Մարկանտոնիո անունով: Տպագր. գործունեությունն սկսել է 1565-ին Հռոմում: 1580-ին ***Հովհաննես Տերզնցու*** հետ տպագրել է «Somar Գրիգորեան», «Դաւանութիւն ուղղափառութեան» (երկուսն էլ՝ 1584) գրքերը, 1586-ին՝ հայոց Ծիսարանից (Մաշտոց) 2 հատված՝ իր գրած հիշատակարանով (զետեղված են Մարկանտոնիո Կոլոնացու «Հիդրոգեոլոգիա...» լատ. գրքում, 1586): Հեղինակ է «Թուղթ առ Թադէոս Բ կաթողիկոս» («ՀՍ», 1906) գործի:

ՍՈՒԼԻՄՈՎ Դանիիլ Եգորովիչ (1890–1937), խորհրդ. կուս. և պետ. գործիչ: 1927–30-ին՝ ՀամԿ(բ)Կ կազմբյուրոյի անդամ: 1930–37-ին՝ ՌԽՖՍՀ կենտգործկոմի նախագահի տեղակալ է, գնդապետ: Բռնադատվել է, գնդակահարվել, արդարացվել:

ՍՈՒԼԼԱ (Sulla, մ. թ. ա. 138–78), հռոմեացի զորավար: 88-ին՝ կոնսուլ: Կապադովկիայում Հռոմի ազդեցությունը պահպանելու նպատակով պայքարել է Տիգրան Բ Մեծի և Միհրդատ VI-ի դեմ: 84-ին հաղթել է Միհրդատ VI-ին: Քաղաքաց. պատերազմում հաղթելով Գ. Մարիոսին՝ 82-ին դարձել է դիկտատոր, իրագործել զանգված. բռնաճնշումներ: 79-ին վայր է դրել լիազորությունները:

ՍՈՒԼՏ (Soult) Նիկոլա Ժան դը Դիո (de Dieu, 1769–1851), Դալմաթիայի դուքս (1808), Ֆրանսիայի գեն.-մարշալ (1847): 1808–13 և 1813–14-ին բանակների հրամ.՝ Իսպանիայում, Պորտուգալիայում, Հվ. Ֆրանսիայում: 1814–15-ին՝ Բուրբոնների ռազմ. նախարարը, «***Հարյուր օր***»-ի ժամանակ՝ Նապոլեոն I-ի շտաբի պետը: 1830–34-ին՝ ռազմ. նախարար, այնուհետև մինչև 1847-ը (ընդմիջումներով)՝ ՆԽ նախագահ:

ՍՈՒԼՈՒ (Sulu), 1. ծով Խաղաղ օվկ-ում՝ Ֆիլիպինյան, Պալավան, Կալիմանտան կղզիների և Սուլու կղզեխմբի միջև: Մակերեսը՝ 335 հզ. *կմ*^{2}, խոր.՝ մինչև 5576 *մ*: Գլխ. նվ.կետ-ները՝ Պուերտո Պրինսեսա (Պալավան կղզի), Իլոիլո (Պանայ կղզի), Զամբոանգա (Մինդանաո կղզի) և Սանդական (Կալիմանտան կղզի): 2. Կղզիների խումբ Մալայան կղզեխմբում (Ֆիլիպիններ): Տարածքը՝ 2,7 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,4 մլն (2010): Տարածված են խոնավ արևադարձ. անտառները: Գլխ. նվ.կետ-ը՝ Խոլո:

ՍՈՒԼՈՒԽԻ ԿՈՒՎ 1907, տեղի է ունեցել մայիսի 27-ին Սուլուխ (Սոլուխ) գ-ում՝ *Գևորգ Չավուշի* ֆիդայիների խմբի և թուրք. զորքի միջև: Սուլուխ գ-ում թուրքերը շրջապատել են Գևորգին ու նրա ֆիդայիներին: Գևորգը վիրավորվել է: Թուրքերին հաջողվել է ներխուժել գյուղ, գրավել պաշտպ. դիրքերը, բայց թուրք. զորքի հրամ. Քյոսե Բինբաշու մահը խուճապի է մատնել նրանց: Դիշեր. անսպասելի հարձակումով ֆիդայիները ճեղքել են թշնամու օղակը, դուրս են բերել վիրավոր Գևորգին և հետացել (մայիսի 27-ին Գևորգը մահացել է):

ՍՈՒԼՈՒՈՔ (Soulogue) Ֆոստեն Էլի (1782–1867), Հայիթիի նախագահ՝ 1847–49-ին, 1849–59-ին՝ կայսր՝ Ֆոստեն I անունով: Գեն. (1843): Կառավարել է որպես բռնակալ. գահից հրաժարվել է բանակի ապստամբության պատճառով:

ՍՈՒԼՖԱԹՈՒՆԵՐ, սուլֆոնաթթուներ, օրգ. միացություններ, պարունակում են օրգ. ռադիկալի հետ միացած սուլֆոխումբ՝ $-SO_2OH$: Ստանում են ածխաջրածինների սուլֆուրացմամբ, սուլֆոքլորիդների RSO_2Cl հիդրոլիզով ևն: Կարևոր միջանկյալ արգասիքներ են լվացամիջոցների, ներկանյութերի, իոնափոխանակ. խեժերի, դեղանյութերի (սուլֆանիլամիդներ) արտադր-յան մեջ:

ՍՈՒԼՖԱՆԻԼԱՄԻԴՆԵՐ, հակամանրէային դեղամիջոցների խումբ, քիմիաբուժ. դեղանյութեր, սուլֆանիլային թթվի ածանցյալները: Կիրառվում են գլխավորապես վարակիչ հիվանդությունների բուժման համար:

ՍՈՒԼՖԱՏԱՋՆԵՐ, սուլֆահիդրոլազներ, *հիդրոլազների* դասի ֆերմենտներ: Կատալիզում են ծծմբական թթվի էսթերների ճեղքումը՝ անջատելով ազատ սուլֆատ: Պարունակվում են կենդ., բուս. օրգանիզմներում և միկրոօրգանիզմներում: Ավելի ուսումնասիրված են արիլսուլֆատազը, որի ակտիվությունը հատկապես բարձր է փափկամարմինների մարսող. խողովակում:

ՍՈՒԼՖԱՏՆԵՐ, ծծմբական թթվի (H_2SO_4) աղերը կամ էսթերները: Չեզոք (K_2SO_4) և թթու աղերը կամ հիդրոսուլֆատները ($KHSO_4$) բյուրեղ. նյութեր են: Չեզոք աղերը տարածված են բնության մեջ: Էսթերները՝ երկօրգանիլսուլֆատները՝ $ROSO_2OR$, և օրգանիլսուլֆատները՝ $ROSO_2OM$ (R-ն օրգ. ռադիկալ է, M-ը՝ մետաղ), ալկիլող ազենտներ են օրգ. սինթեզում:

ՍՈՒԼՖԻԴՆԵՐ, ծծմբի միացությունները մետաղների և որոշ ոչ մետաղների հետ: Մետաղների Ս.՝ ծծմբաջրածնային թթվի աղերն են, չեզոք (Na_2S) և թթու կամ հիդրոսուլֆիդներ (NaHS): Բնական Ս-ից ստանում են գունավոր մետաղներ և SO_2: Ս. լյումինոֆորներ են և կիսահաղորդիչներ (CdS, ZnS): Մոլիբդենի, տիտանի Ս. պինդ քսանյութեր են: Ֆոսֆորի Ս. կիրառում են հանքահարստացման ռեագենտների, ֆոսֆորօրգ. միջատասպանների արտադր-յան մեջ: Տես ***Սուլֆիդներ օրգանական***, ***Պոլիսուլֆիդներ***:

ՍՈՒԼՖԻԴՆԵՐ ՕՐԳԱՆԱԿԱՆ, թիոեթերներ, RSR′ (R-ը և R′-ն օրգ. ռադիկալներ են): Թույլ եթերային հոտով անգույն հեղուկներ են: Պարունակվում են նավթում: Կիրառվում են որպես հակաօքսիդանտներ և կայունարարներ (շարժիչ. վառելանյութեր, քսայուղեր), լուծիչներ: Օրգ. սուլֆիդ է ***իպրիփտը***: Հայտնի են նաև երկ-, եռ- և պոլիսուլֆիդներ՝ RS_nR', որտեղ n-ը S-ի ատոմների թիվն է:

ՍՈՒԼՖԻՏՆԵՐ, ծծմբային թթվի (H_2SO_3) աղերը և էսթերները: Աղերը՝ չեզոք (Na_2SO_3) և թթու կամ հիդրոսուլֆիտ ($NaHSO_3$): Ջր. լուծույթներում օքսիդանում են մինչև ***սուլֆատներ***: Օգտագործվում են մանածագործ. արդ-յան մեջ՝ տպագրության և ներկման ժամանակ ($KHSO_3$, $NaHSO_3$), փայտանյութի թաղանթանյութի արտադր-յան մեջ:

ՍՈՒԽՈՎԵՎՍԿԱՅԱ Լիդիա Պավլովնա (Պետրովա, 1909–1991), ռուս. դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1990): Խաղացել է Ե. Շվարցի «Ստվեր», Ֆ. Դյուրենմաթի «Ծեր կնոջ այցը», Ա. Արբուզովի «Հնաոճ կատակերգություն» և այլ ներկայացումներում: Նկարահանվել է կինոյում («№ 217 մարդը», «Մենամարտ», «Քսան տարի անց» ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ՍՈՒԽՈՒՇՎԻԼԻ Իլյա Իլյայի (1907–1985), բալետի վրացի արտիստ, բալետմայստեր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1958): 1926-ից՝ Թբիլիսիի ՕԹԹ-ի մենապարող (Դև՝ Ա. Ռուբինշտեյնի «Դևը», ևն): 1945-ից (Ն. Շ. Ռամիշվիլու հետ) ղեկավարել է Վրաստանի պարի անսամբլը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949):

ՍՈՒԽՈՄԼԻՆՈՎ Վլադիմիր Ալեքսանդրովիչ (1848–1926), ռուս. ռազմ. գործիչ, հեծելազորի գեն. (1906): 1908–09-ին՝ ԳՇ պետ, 1909–15-ին՝ ռազմ. նախարար: 1916-ին կալանավորվել է, 1917-ին դատապարտվել է ցմահ բանտարկության՝ ԱՀՊ-ին բանակի անպատրաստության համար: 1918-ին ազատվել է ծերության պատճառով և տարագրվել:

ՍՈՒԽՈՄԼԻՆՍԿԻ Վասիլի Ալեքսանդրովիչ (1918–1970), ռուս. մանկավարժ: ԽՍՀՄ ՄԳԱ ակադ. (1968): Սոց. աշխ. հերոս (1968): Ստեղծել է մարդասիր. սկզբունքների վրա հիմնված մանկավարժ. յուրօրինակ համակարգ, որի կենտրոնում երեխան է. ուսուցման ու դաստիարակության գործընթացները նպատակաուղղված են նրա անձի զարգացմանը: Հեղինակ է «Սիրտս նվիրում եմ մանուկներին» (1969), «Քաղաքացու ծնունդը» (1970), «Դաստիարակության մասին» (1973) և այլ աշխ-ների:

ՍՈՒԽՈՑ Պավել Օսիպովիչ (1895–1975), ռուս ավիակոնստրուկտոր: Տեխ. գիտ. դ-ր: Սոց. աշխ. հերոս (1957, 1965): 1956-ից՝ գլխ. կոնստրուկտոր: Խորհրդ. հրթիռ. և գերձայն. ավիացիայի ստեղծողներից: Ս-ի ղեկավարությամբ ստեղծվել են Սու-9, -5 ռեակտիվ ինքնաթիռները, սլաքանման և եռանկյուն թևերով գերձայն. կործանիչներ:

ԽՍՀՄ (1943, 1975, հետմահու), ՌԴ (1996, հետմահու) Պետ., Լենինյան (1968), Ա. Ն. Տուպոլևի անվ. (1975) մրց-ներ:

ՍՈՒԽՈՆ (Suchon) Էուգեն (1908–1993), սլովակ կոմպոզիտոր: Սլովակ. օպերայի հիմնադիրը («Զրապտույտ», 1949, «Սվյատոպլուկ», 1959): Հեղինակ է նաև «Մերձկարպատյան երկրի սաղմոսը» (1938) կանտատի, խմբերգերի («Լեռների մասին», 1942, ևն), «Մետամորֆոզներ» սիմֆ. սյուիտի (1953), «Գեղջկական սիմֆոնիետի» (1957) և այլ գործերի:

ՍՈՒԽՈՈՒՄԻՉԵՆԿՈՎ Սերգեյ Նիկոլաևիչ (ծ. 1956), ռուս հեծանվորդ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1979): Օլիմպ. խաղերի (1980), ԽՍՀՄ (1979–83) չեմպիոն, խաղաղության հեծանվավազքի կրկնակի (1979, 1984) հաղթող: Ճանաչվել է սիրող. հեծանվավազքի աշխարհի ուժեղագույն մարզիկ (1979–81):

ՍՈՒԽՈՒՄ, Աբխազիայի մայրաքաղաքը, նվ.կետ Սև ծովի ափին: Բն.՝ 80 հզ. (2010): Ծով. առողջարան է: Հայտնի է VI դ.-ից՝ Դիոսկուրիադա, 736-ից՝ Ցխում անունով: Հայերը կազմում են ք-ի բնակչության 15 %-ը:

Հայերի հոսքը Ս. աճել է հատկապես 1895–96-ի հայկ. կոտորածների, 1915-ի Մեծ եղեռնի ժամանակ: Նրանց մի մասը համշենցիներ էին, որոնք գաղթել են Տրապիզոնի, Օրդուի և Սամսունի շրջաններից: XIX դ-ի վերջին կառուցել են եկեղեցիներ, բացել դպրոցներ: 1910 ական թթ-ին Ս-ում գործել է հայկ. տպարան, 1912–13-ին տպագրվել են մի շարք պարբ-ներ: 1920-ական թթ-ին հայերը կազմել են բնակչության գերակշիռ մասը: 1928–38-ին գործել է հայկ. թատրոն, 1953-ից՝ թատերախումբ: Կար հայկ. մանկավարժ. ուսումնարան: 1964-ին Ս-ում հիմնադրվել է ՀԳՄ Աբխազիայի մասնաճյուղը: 1990-ին ստեղծվել է «Առուն» հանրապետ. հայկ. մշակութ. բարեգործ. միությունը: Գործում է հայկ. միջնակարգ դպրոց: Վրաց-աբխազ. հակամարտության պատճառով հայերի մի մասը հեռացել է Ս-ից, հիմնականում՝ ՌԴ: Ս-ում ներկայում ապրում է շուրջ 6192 հայ (2011):

ՍՈՒԽՈՒՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ պետական, գործել է 1928–38-ին: 1953-ից թատրոնը վերածվել է հայկ. թատերախմբի, որը 1956–60-ին գործել է որպես ակումբ. թատերախումբ: Բեմադրություններից են՝ Շիրվանզադեի «Մորգանի խնամին», Ե. Յանովսկու «Յասում», Ֆ. Շիլլերի «Ավազակներ», Վ. Շեքսպիրի «Օթելլո» ևն:

ՍՈՒԽՈՒՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, հայկ. 1-ին տպարանը («Պրոմեթեյ») և գրախանութը 1910-ական թթ-ին բացել է Խաչատուր Ավդալբեգյանը (1888–1976): 1912–21-ին լույս է տեսել «Լոյս» (արխազահայ 1-ին պարբ-ը), այնուհետև՝ «Նոր կեանք», «Փարոս», «Կարմիր աստղ» հաս-քաղ. թերթերը, 1932–35-ին՝ «Սովետսկի պիսատել Աբխազիի» հնգալեզու թերթը, որտեղ տպագրվել են հայ գրողների գործեր: Տպագրվել են նաև «Ձայն համշենական» (1972) և «Սևծովյան այգաբաց» (1991) ալմանախները: 1990-ից հետո նույնպես Սուխումում տպագրվել են «Գրական Համշեն» (2012) ալմանախը, 1991-ից՝ *«Համշեն»*, 2004-ից՝ *«Ձայն Համշենական»* (Երևան) թերթերը:

ՍՈՒԿԱՉՅՈՎ Վլադիմիր Նիկոլաևիչ (1880–1967), ռուս. բուսաբան, աշխարհագետ, կենսաերկրաքիմակեցությունների մասին գիտ-յան հիմնադիրներից, երկրաբուսաբ. դպրոցի ստեղծողը Ռուսաստանում: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1943): Սոց. աշխ. հերոս (1965): Աշխ-ները վերաբերում են անտառագիտ-յան, ճահճագիտ-յան տեսությանն ու մեթոդներին, սպորածաղկափոշային վերլուծությանն ու պաշտպ. անտառաբուծությանը:

ՍՈՒԿԱՐՆՈ (Sukarno) (1901–1970), Ինդոնեզիայի նախագահ՝ 1945–67-ին: Ինդոնեզիայի Ազգ. կուս-յան (1927) հիմնադիրներից և նախագահը: 1929–31 և 1933–42-ին Ինդոնեզիայում նիդեղանդ. գաղութի գերիշխանության դեմ պայքարին մասնակցելու համար բանտարկվել է և աքսորվել: *Բանդունգի խորհրդաժողովի* (1955) նախաձեռնողներից է:

ՍՈՒԿԱՐՆՈՊՈՒՏՐԻ (Sukarnoputri) Մեգավատի (ծ. 1947), Ինդոնեզիայի նախագահ՝ 2001–04-ին: *Սուկառնոյի* դուստրը: 1999–2001-ին՝ փոխնախագահ:

ՍՈՒԿԱՎԵՏ, հրաբխ. լեռ, Հայկ. Պարի ամենաբարձր լ-գագաթը (3445 *մ*): Հիմքի շրջագիծը՝ մոտ 15 *կմ*: Ս-ից սկիզբ են առնում Շարիանի (Արածանիի վտակ) ձախափնյա վտակները: Լանդշաֆտը լ-տափաստան. է:

ՍՈՒԿՐԵ (Sucre), Բոլիվիայի պաշտոն. մայրաքաղաքը և Չուկիսակա դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 310 հզ. (2010): Կան XVI–XVII դդ-ի եկեղեցիներ, գաղութ. շրջանի շինություններ: Հիմնադրել են իսպանացիները 1538-ին՝ Լա Պլատա անունով: Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՍՈՒԿՈՒԼԵՆՏՆԵՐ (լատ.՝ succulentus – հյութալի), չոր բնակավայրերի բազմամյա բույսեր, որոնք ջրի պաշարները կուտակում են հյութալի, մսոտ տերևներում (ագավաներ, հալվե) կամ ցողուններում (կակտուսներ, որոշ իշակոթուկներ): Ս. *քսերոֆիտների* հատուկ տիպ են:

ՍՈՒՀԱՐՏՈ (Suharto, 1921–2008), Ինդոնեզիայի նախագահ՝ 1968–98-ին, գեն.: 1963-ից՝ ցամաք. ուժերի ռազմավար. պահուստի զորքերի հրամ., այնուհետև նախարար՝ ցամաք. ուժերի հրամ.: Գոլկար կուս-յան հիմնադիր և նախագահ (1974-ից):

ՍՈՒՀՐԱՎԱՐԴԻ Շիհաբ ադ-Դին Յահյա (1155–1191), պարսիկ միստիկ: Միստիկ. պայծառացման (իշրակ) մասին ուսմունքի հիմնադիրը. սկզբնավորել է առանձնահատուկ ուղղություն *սուֆիզմում*: Որոշակի ազդեցություն է կրել նորպլատոնականությունից և զրադաշտականությունից:

ՍՈՒՄԱՏՐԱ (Sumatra), կղզի Մալայան կղզեխմբում (Ինդոնեզիա): Տարածքը՝ 435 հզ. *կմ²*, բն.՝ 50,6 մլն (2010): Բարձր.՝ մինչև 3800 *մ* (Կերինչի գործող հրաբուխ): Կան նավթի և գազի հանքավայրեր: Գլխ. ք-ները՝ Պալեմբանգ, Պադանգ, Մեդան:

ՍՈՒՄԲԱ (Sumba), կղզի Ինդոնեզիայում՝ Փոքր Զոնդյան կղզեխմբում: Տարածքը՝ 11,2 հզ. *կմ²*: Բարձր.՝ մինչև 1225 *մ*: Գլխ. ք.՝ Վայնգապու:

ՍՈՒՄԲԱՍՅԱՆ Յուրի Հայկի (ծ. 1924), փիլ.: Փիլ. գիտ. դ-ր (1984), պրոֆ. (1986): Աշխ-ները վերաբերում են զարգացող երկրների քաղ. սոցիոլոգիայի խնդիրներին, Ասիայի, Աֆրիկայի և Լատ. Ամերիկայի երկրներում քաղ. գործընթացների և քաղ. վարչակարգի հարցերին:

ՍՈՒՄԳԱՅԻԹ, ք. Ադրբեջանում՝ Կասպից ծովի ափին: Ադրբեջանի՝ մեծությամբ 3-րդ քաղաքն է: Բն.՝ 336 հզ. (2012): 1980-ական թթ-ին Ս-ում ապրել է շուրջ 20 հզ. հայ: 1988-ի փետր. 27–29-ին ադրբ. իշխանությունների կազմակերպած քաղաքի հայ ազգաբնակչության եղեռնի և զանգված. տեղահանության հետևանքով Ս-ում հայեր չեն մնացել:

ՍՈՒՄԳԱՅԻԹԻ ԿՈՏՈՐԱԾ 1988, Սումգայիթ ք-ում փետր. 27–29-ին Ադրբեջանի կառավարող շրջանների իրականացրած հայ բնակչության զանգված. տեղահանությունն ու եղեռնը: Նպատակը՝ կանխել ԼՂԻՄ-ի հիմնախնդրի հնարավոր լուծումը, արյունահեղ գործողությունների հեռանկարով հայերին ահաբեկելը և արցախյան ազատագր. պայքարից հրաժարվել հարկադրելը: Ոճրագործությունը եղել է ծրագրված, իրագործվել է ԽՄԿԿ ԿԿ-ի թողտվությամբ: Ս. կ-ի զոհերի ճշգրիտ թիվը պարզված չէ: Ըստ Ադրբեջանի դատախազության տրամադրած տվյալների՝ ԽՍՀՄ դատախազությունը հայտարարել է, որ «Սումգայիթում զոհվել է հայ ազգության 27 քաղաքացի»: Սակայն ըստ ականատեսների՝ միայն ինքնությունը չպարզված զոհերի թիվը քաղաքի դիահարաններում անցել է 70-ից: 18 հզ. փախստականներ հաստատվել են ՀԽՍՀ-ում և ԽՍՀՄ այլ հանրապետություններում: Ս. կ. դատապարտել են ԵԽ (1988), ԱՄՆ Սենատը (1989) և այլ կազմ-յուններ:

ՍՈՒՅՋԺՈՈՒՄ, ք. Չինաստանի Ցզյանսու նահգ-ում: Բն.՝ 10,58 մլն (2010): Երկթղ. կարևոր հանգույց է: Զարգացած են մետաղագործությունը, լեռն. սարքավորումների, բամբակեղենի և սննդի արդ-յան ճյուղերը, արհեստագործությունը:

ՍՈՒՆ, կայսեր. հարստություն Չինաստանում՝ 960–1279-ին: Գահազրկել են մոնղ. նվաճողները:

ՍՈՒՆ ՅԱԹՍԵՆ, **Սուն Չժունշան**, **Սուն Վէն**, 1866–1925), չին պետ. և քաղ. գործիչ: 1894-ին ստեղծել է Սինչժունհոյ, 1905-ին՝ առավել զանգված. Տունմենհոյ հեղ. կազմ-յունները: Սինհայի հեղ-յան (1911–12) առաջնորդ, Չինաստանի Հանրապետության 1-ին (ժամանակավոր) նախագահը (1912-ի հունվ. 1–ապրիլ 1): 1912-ին հիմնադրել է *Գոմինդան* կուս-յունը:

ՍՈՒՆ ՅԱՔԻ (մ. թ. ա. 313–238), չին ռազմ. տեսաբան և զորավար: Հեղինակ է (մ. թ. ա. VI դ.) ռազմ. արվ-ի վերաբերյալ «Պատերազմի արվեստը» աշխ-յան:

ՍՈՒՆԳԱՐԻ, գետ Չինաստանի հս-արլ-ում, Ամուրի աջ վտակը: Երկ.՝ 1870 *կմ*, ավազանը՝ 524 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 2500 *մ³/վ*: Նավարկելի է Գիրին ք-ից ներքև: Գործում է ջրէկ: Ափին է Հարբին ք.:

ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ Գաբրիել Մկրտումի (1825–1912), դրամատուրգ, հաս. գործիչ: Հայ գրկ-յան մեջ ռեալիզմի սկզբնավորողներից: Գրել է Թիֆլիսի բարբառով: Հեղինակ է «Խաթաբալա» (1881, կինոնկար՝ 1971), «Քանդած օջախ» (1882), «Էլի մէկ զոհ» (1884), «Բաղնըսի բոխչա» (1889), «Օսկան Պետրովիչն էն կինքումը» (1899), «Եւ այլն կամ Նոր Դիոգինէս» (1907) կատակերգությունների, «Համմալի մասլահաթնիրը» (1871–76), «Հադիդի մասլահաթնիրը» (1882–86) ֆելիետոնների, «Վարինկի վէչեր» (1877) պատմվածքի, «Ամուսիններ» (1888, գր. լեզվով միակ երկը, հրտ.՝ 1893) դրամայի, «Սէր եւ ազատութիւն» (1909), «Կտակ» (1912) պիեսների: Ս-ի ստեղծագործության բարձրակետը «Պէպօ» (1876, կինոնկար՝ 1935) կատակերգությունն է:

ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԱՏՐՈՆ ազգային, ակադեմիական, հիմնադրվել է 1921-ին Երևանում՝ որպես Հայաստանի Առաջին պետթատրոն՝ Թիֆլիսի «*Արտնումների թատրոնի*» հիման վրա, բացվել է 1922-ին (1937-ից՝ Գ. Սունդուկյանի անվ.): Թատրոնի գեղ. ղեկ.՝ Լևոն Քալանթար, թատերախմբում՝ Հասմիկ, Վ. Փափազյան, Օ. Գուլազյան, Ա. Ոսկանյան, Հ. Ներսիսյան, Գ. Ավետյան, Վ. Վաղարշյան, Մ. Ջանան, Ա. Ավետիսյան, Հ. Խաչանյան, Ս. Գարագաշ, Մ. Մանվելյան, Գ. Ջանիբեկյան, Գ. Գաբրիելյան, 1925-ից՝ Հ. Աբելյան: Տարբեր տարիների թատրոնը ղեկավարել են ռեժ-ներ Ա. Գուլակյանը, Վ. Աճեմյանը, Հ. Ղափլանյանը, Ե. Ղազանչյանը, Խ. Աբրահամյանը, Վ. Շահվերդյանը, Տ. Գասպարյանը, Ա. Էլբակյանը (2015-ից՝ գեղ. ղեկ.): Թատրոնի զարգացմանը նպաստել են նաև ռեժ-ներ Ն. Ծատուրյանը, Տ. Շամիրխանյանը, Գ. Մկրտչյանը, դերասաններ Դ. Մալյանը, Թ. Սարյանը, Գ. Հակոբյանը, Ս. Սարգսյանը, Խ. Աբրահամյանը, Բ. Ներսիսյանը, Ա. Կոթիկյանը, Գ. Խաժակյանը, Գ. Հարությունյանը,

Խ. Նազարեթյանը, Մ. Կոստանյանը, Վ. Միրիջանյանը, Մ. Սիմոնյանը, Վ. Վարդերեսյանը, Լ. Հովհաննիսյանը, Լ. Առուշանյանը, Շ. Ղազարյանը, Վ. Մարգունին, Կ. Ջանիբեկյանը, Ա. Խոստիկյանը, Ժ. Ավետիսյանը, Հ. Մովսիսյանը, Գ. Մեջլումյանը, Ա. Սաֆարյանը, Ն. Խերանյանը, Տ. Ներսիսյանը և ուր.: Բեմադրվել են Գ. Սունդուկյանի «Պեպո» (1922), Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար» (1927), Շիրվանզադեի «Պատվի համար» (1939), Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր» (1940), Վ. Փափազյանի «Ժայռ» (1944), Լ. Ն. Տոլստոյի «Կենդանի դիակ» (1951), Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» (1961), «Ապուշը» (ըստ Ֆ. Մ. Դոստոևսկու, 1967), Վ. Շեքսպիրի «Կորիոլան» (1978), «Հացավան» (ըստ Ն. Զարյանի, 1980), Ա. Աղասարյանի «Փրկեցեք մեր հոգիները» (1990), Վ. Վարդանյանի «Ախացելը» (2000) ևն:

ՍՈՒՆՆԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, մահմեդականության երկու հիմնական (*շիականության* հետ) ուղղություններից: Մահմեդական երկրներում սուննիները մեծամասնություն են կազմում (բացառությամբ Իրանի, Հվ. Իրաքի, Հս. Եմենի): *Ղուրանի* հետ ընդունում են նաև սրբազան ավանդությունը: Բարձրագույն մահմեդ. իշխանության (իմամ-խալիֆ) մասին հարցը լուծվում է «ողջ համայնքի համաձայնությամբ»՝ ի տարբերություն շիականության, որը իմամ-խալիֆ է ճանաչում միայն Ալիդներին:

ՍՈՒՄՄԻ (հին ռուս.՝ սում), 1. մերձբալթյան ֆիններ. ցեղ, ապրել են (II հզ–ամյակի 2-րդ կես–I հզ–ամյակում) Հվ–արմ. Ֆինլանդիայում: 2. Ֆինլանդիայի ֆիններ. անվանումը:

ՍՈՒՉԱՎԱ, (Suceava), ք. Ռումինիայի հս–արլ–ում, համանուն ժուդեցի վարչ. կենտրոնը: Բն.՝ 107 հզ. (2010): 1-ին անգամ հիշատակվել է 1388-ին, մինչև 1566-ը եղել է Մոլդ. իշխանության մայրաքաղաքը: Հայերը Ս. են եկել Անիից, Ղրիմից, Լեհաստանից և այլ վայրերից: Իշխան Ալեքսանդր Բարեպաշտը 1401-ի հրովարտակով Ս-ում հայերի համար հաստատել է հոգևոր առաջնորդ. աթոռ, 1418-ին Լեհաստանից հրավիրել 3 հզ. հայ ընտանիք, որոնցից 700-ը հաստատվել են Ս-ում: Հայ համայնքն ունեցել է իր քաղաք. վարչությունը: Հայ վաճառականները տարանցիկ առևտրով են զբաղվել Լեհաստանում, Արմ. Ուկրաինայում, Ռուսաստանում: 1672-ին մասնակցել են Դուկա իշխանի դեմ համաժող. շարժմանը, որի պարտությունից հետո ստիպված հեռացել են Տրանսիլվանիա, այնտեղ հիմնադրել Գեռլա և Եղիսաբեթուպոլիս ք-ները, կառուցել վանքեր, եկեղեցիներ, մատուռներ: Ներկայում կանգուն են Սբ Օգսենտ կամ Ջամկա վանքը, Սբ Խաչ եկեղեցին (XV դ.), Հաճկատարի վանքը (1512), Սբ Սիմեոն եկեղեցին (XVI դ.), 1776-ին կառուցված Սբ Հովհաննես Մկրտիչ մատուռը և Բրունգուլյան (Պրունկուլ) հայկ. նշանավոր տոհմի պատվին 1904-ին կառուցված Սբ Հարություն մատուռը: Ս. եղել է հայ գրչության կենտրոն: Եկեղեցիներում գրված և ընդօրինակված ձեռագրերը պահվում են Երևանի, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան մտնդ-ներում և այլուր: Ս-ում են գործել գրիչ և մանրանկարիչ Ղազար Բաբերդացին, գրիչներ Սարգիս դպիր Մելիտենցին, Սրապիոն Բաբերդացին և ուր., բանաստեղծներ Մինաս Թոխաթցին և Վրթանես Սոնկեցին: 1775-ից Ս. հայտարարվել է ազատ առևտր. քաղաք, հայկ. համայնքը համալրվել է Ռումինիայի այլ վայրերից, մասամբ՝ նաև Լեհաստանից ու Բուլղարիայից եկած հայերով: Բացվել է հայկ. աշխարհիկ դպրոց (1831-ին՝ 71 աշակերտ): 1851-ին դպրոցին կից գործել է թատրոն: Հետագայում հայերի թիվը նորից նվազել է. 1923-ին Ս-ում ապրել է 300, 1948-ին՝ 100 հայ, 1985-ին՝ մոտ 20 հայ ընտանիք: Քաղաքի կենտր. փողոցներից մեկը կոչվում է Արմենեասկը (Հայկական):

ՍՈՒՉԺՈՒՌ, **Ուսյան,** ք. Չինաստանի Ցզյանսու պրովինցիայում, նվինգստո Չին. Մեծ ջրանցքի ափին: Բն.՝ 1,6 մլն (2010): Տրանսպորտ. հանգույց է, էլեկտրոն. սարքերի և սարքավորումների, համակարգիչների արտադր-յան կենտրոններից, ինտենսիվ գղտ. շրջանի կենտրոն: Հիմնադրվել է մ. թ. ա. 514-ին՝ որպես Ուսյան պետության մայրաքաղաք՝ Հելյոյ անունով: Կան հնագոյն զբոսայգիներ, կամուրջներ, ջրանցքներ և այգիներ, որոնց մի մասը Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՍՈՒՊԵՐ... (լատ.՝ super – վերևից, վրա, մակ...), բարդ բառերի սկզբնամաս. ցույց է տալիս. 1. տեղադրությունը որևէ բանի վրա, 2. որևի բարձրագույն աստիճան (օր.՝ սուպերէլիտա), 3. ղեկավար դիրք (օր.՝ սուպերարբիտր):

ՍՈՒՊԵՐՖՈՍՖԱՏ, ֆոսֆոր. պարարտանյութ, հիմնականում՝ $Ca(H_2PO_4)_2$-ը գիպսի հետ խառը: Տարբերում են հասարակ (պարունակում է 14–19,5 % P_2O_5), հատիկավորած, կրկնակի (45–48 % P_2O_5), ամոնիակավորած, մանգանավորած, բորային, մոլիբդենային:

ՍՈՒՊԻԼՈՒԼԻՈՒՄԱ I, Խեթ. թագավորության թագավոր՝ մ. թ. ա. մոտ 1397–48-ին: Հպատակեցնելով Միտաննիին՝ վերականգնել է խեթերի գերիշխանությունն Առաջավոր Ասիայում: *Հայասայի* Հուկաննա թագավորի հետ կնքել է դաշինք և ձեռք բերել հզոր դաշնակից:

ՍՈՒՊԻԼՈՒԼԻՈՒՄԱ II, Խեթ. թագավորության թագավոր՝ մ. թ. ա. XII դ-ի 1-ին քառորդին: Նրա օրոք թրակա-փռյուգ. ցեղերը ներխուժել են Փոքր Ասիա և կործանել Խեթ. թագավորությունը:

ՍՈՒՊՅԱՆ Բորիս Դավթի (1904–1967), տանկ. զորքերի գեն-մայոր (1945): 1939–1940-ին մասնակցել է Խորհրդա-ֆինն. պատերազմին, 1942-ին՝ 10-րդ տանկ. բրիգադի հրամ. նշանակվելուց հետո, *Ստալինգրադի ճակատամարտին*, 1943-ի հուլիսից՝ որպես Տափաստան. 53-րդ բանակի զրահատանկ. և մեքենայացված զորամասերի հրամ., Բելգորոդ–Խարկով ուղղությամբ հարձակող. մարտերին, գերմ. Կորսուն-Շևչենկովսկիի, Յասսի-Քիշնևի խմբավորումների վերացմանը, Ռումինիայի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի ազատագրմանը, որպես զրահատանկ. միավորման հրամ.՝ Ճապոնիայի ջախջախմանը: 1956-ին զորացրվել է:

ԽՍՀՄ Կարմիր դրոշի (3), Կուտուզովի 2-րդ աստիճանի (2), Կարմիր աստղի (2) շքանշաններ:

ՍՈՒՊՐԵՄԻԱ (լատ. – ճնշում), ժառանգականորեն ձևափոխված օրգանիզմների (մուտանտներ) հատկանիշների մասնակի կամ լրիվ վերականգնումը նոր մուտացիայի հետևանքով:

ՍՈՒՊՐՈՒՆ Ստեպան Պավլովիչ (1907–1941), ռուս օդաչու, փոխգնդ. (1940), ԽՄ հերոս (1940. հետմահու՝ 1941): Մասնակցել է Չինաստանում ճապոն. զորքերի դեմ մարտերին (1939–40): ՀՄՊ-ի ժամանակ՝ կործանիչ ավիացիայում գնդի հրամ., խփել է հակառակորդի 2 ինքնաթիռ, զոհվել է գերմ. 6 ինքնաթիռի դեմ մարտում:

ՍՈՒՔԱՅԱՆ Արամ Վարդանի (ծ. 1933), պարէնտերոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր, պրոֆ.: Աշխ-ները վերաբերում են ուռուցք. հիվանդների վիրաբուժ., քիմ. և ճառագայթ. բուժման փուլերում փոխանակության խանգարումների և դրանց կարգավորման հարցերին:

ՍՈՒՔԱՅԱՆ Յելենտինա Միքայելի (ծ. 1937), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դ-ր (1983), պրոֆ. (1995): Աշխ-ները վերաբերում են գլխուղեղի ածխաջրածնային նյութափոխանակության կարգավորմանը, նյարդահակ միջոցների ներգատ. ու սիրտանոթ. համակարգերի վրա լիմֆոցիտ. միջնորդանյութերի ազդեցության մեխանիզմներին: ԵՊԲՀ ոսկե մեդալ (2000):

ՍՈՒԽԱՄԲԱՐ (Tanacetum balsamita), աստղածաղկազգիների ընտանիքի տարեկան ցեղի հոտավետ, բազմամյա խոտաբույս: Աճում է Կովկասում, Փոքր և Առաջավոր Ասիայում՝ տափաստան. քարքարոտ լանջերին և մշակովի այգիներում: Պարունակում է եթերայուղեր: Օգտագործվում է պարտեզների ստեղծման և համեմունքների ստացման համար, ժող. բժշկության մեջ՝ որպես հակաջղաձգ. միջոց: Միջատասպան է:

ՍՈՒԽԱՆԻՆ Իվան (ծ. թ. անհտ–1613), ռուս գեղջուկ Կոստրոմայի գվռ–ից: Ըստ պաշտոն. վարկածի (պատկանել է *Միխայիլ Ֆեոդորովիչ* ցարին)՝ 1613-ին տանջամահ է արվել ցարի գտնվելու վայրը լեհ-լիտվ. ջոկատին չմատնելու համար: Ս-ի հերոսությանն է նվիրված Մ. Ի. *Գլինկայի* «Կյանք հանուն ցարի» («Իվան Սուսանին») օպերան:

ՍՈՒՍԵՐ, 1. ծակող, հազվադեպ՝ ծակողկտրող սառը զենք՝ ուղիղ (մինչև 1 *մ* և ավելի), հարթ կամ եռանիստ շեղբով և բռնակով: Տարածվել է XVI դ-ում, համարվել է ազնվական. զենք մինչև XIX դ., հետագայում՝ քաղաքաց. շքերթ. համազգեստի բաղադրիչ: 2. Սպորտ. Ս. պողպատե եռանիստ ճկուն շեղբով է՝ դաստապանով ու էլեկտրահպակ. ծայրապանով: Երկ.՝ մինչև 110 *սմ*, զանգվածը՝ 770 *գ*:

ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏ, ձեռնամարտում սառը զենքին տիրապետելու հնարքների համակարգ: Սպորտ. մենամարտի (վարժասուսեր, սուսեր, սրեր) մարզաձև: Մարզ. Ս-ի սկզբունքները ձևավորվել են Ֆրանսիայում XIII դ-ի վերջին: Ս-ի միջազգ. ֆեդերացիան (FIE, հիմն.՝ 1913) ընդգրկում է 135 երկիր (2010): Օլիմպ. խաղերի ծրագրում է 1896-ից, աշխարհի առաջնությունների՝ 1937-ից, Եվրոպայինը՝ 1906–36 և 1981-ից:

Ս. ՀՀ-ում տարածվել է 1922-ից, հանրապետ. առաջնությունները՝ 1945-ից: ՀՀ մարզիկներից Վ. Ձեռնիկովը (խոցասուսեր) դարձել է XVII օլիմպ. խաղերի 3-րդ, աշխարհի և ԽՍՀՄ առաջնությունների 2-րդ և 3-րդ մրցանակակիր, հաղթել ԽՍՀՄ գավաթի խաղարկությունում (1958): Լուրջ հաջողությունների են հասել Յանա Եգորյանը [Մոսկվա, ՌԴ կրկնակի, Եվրոպայի քառակի, աշխարհի և օլիմպ. խաղերի կրկնակի (2015) չեմպիոնի], Աշոտ *Դարագյանը*, Էմմա

Պողոսովան, Մայքլ և Էդուարդ Հովհաննիսյանները, նաև միջազգ. ս. վ. Արմեն Գրիգորյանը («Դրուժբա» համամիութ. և Եվրոպ. մրցաշարի կրկնակի հաղթող): 2018-ին Ս-ի Եվրոպայի Մ-23 առաջնությունը անցկացվելու է Երևանում:

ՍՈՒԼՋՈՎ Միխայիլ Անդրեևիչ (1902–1982), խորհրդ. կուս. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1962, 1972): 1939-ից՝ Ստավրոպոլի երկրկոմի 1-ին քարտուղար: 1944-ից՝ կուս-յան ԿԿ Լիտվ. ԽՍՀ բյուրոյի նախագահ: 1947-ից՝ ԽՄԿԿ ԿԿ քարտուղար: 1952–53-ին և 1955-ից՝ ԽՄԿԿ ԿԿ քաղբյուրոյի (նախագահության) անդամ: Վարել է ԽՄԿԿ գաղ. հարցերի աշխ-նեը, շատ կոշտ վերաբերմունք է դրսևորել ազգ. հարցի նկատմամբ:

ՍՈՒՄՊԵՆՋԻԱՆԵԲ (ուշ լատ.՝ suspensio – կախյալ), **կախույթներ**, հեղուկ միջավայրով և պինդ դիսպերս ֆազով համակարգեր, որոնց մասնիկները բավականաչափ խոշոր են և արագ նստում կամ բարձրանում են հեղուկի երես: Ս. կիրառում են շին. տեխնոլոգիաներում, թղթի, լաքաներկերի ևնի արտադր-յան համար:

ՍՈՒՄՐ ԵՐԿԱԹԻ, **կարմրաներկ**, բնական գունակ՝ դեղնակարմրավունից բալագույն, հիմն. բաղադրիչը երկաթի օքսիդն է՝ Fe_2O_3: Կիրառվում է լուսա-, հիմքա- և թթվակայուն պատվածքներ առաջացնող լաքաներկեր. նյութերում:

ՍՈՒՄՐ ԿԱՊԱՐԻ, բնական գունակ՝ բաց նարնջագույնից կարմիր, հիմն. բաղադրիչը կապարի օքսիդն է՝ Pb_3O_4: Կիրառվում է լաքաներկ. պատվածքների հակակոռոզիոն շերտերում: Թունավոր է:

ՍՈՒՎԱ (Suva), *Ֆիջի* պետության մայրաքաղաքը Վիտի Լևու կղզում, նվինգստ Խաղաղ օվկ-ի ափին: Բն.՝ 85,8 հզ. (արվարձաններով՝ 170 հզ., 2010): Զարգացած է զբոսաշրջությունը:

ՍՈՒՎԱԼՅԱՆ Ավետիս Գրիգորի (1934–2006), վնասվածքաբան-օրթոպեդ, ըմբիշ: Բժշկ. գիտ. դ-ր (1987), պրոֆ. (1989): ԽՍՀՄ ս. վ. (1958): Հունա-հռոմ. ըմբշամարտի ՀԽՍՀ և Մոսկվայի բազմակի չեմպիոն (1954–66): Աշխ-ները վերաբերում են կոտրվածքի տեղում ոսկրի արյունատար համակարգի հարմարվող. հնարավորություններին: Ստեղծել է նոր կառուցվածքներ և սարքավորումներ՝ ներոսկր. ոսկրամիացման համար: Առաջարկել է վերջույթների և զանգուղեղի զուգակցված վնասվածքների դասակարգումը և բուժման եղանակներ: Համահեղինակ է բժշկ. «Ռուս-անգլերեն մեծ բառարանի» (2000):

ՍՈՒՎԱՐՅԱՆ Արզիկ Միքայելի (ծ. 1951), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (2009), պրոֆ. (2010): 1995–98-ին՝ «Հայագրոբանկի» վարչության փոխնախագահ, 1999-ին՝ նախագահ, 1999–2004-ին՝ «Հայխնայբանկի» փոխտնօրեն, 2004-ից՝ «ՎՏԲ-Հայաստան» բանկի ուս. կենտրոնի ղեկ.: Աշխ-ները վերաբերում են կառավարման համակարգերի զարգացման, տնտ. մեխանիզմի կատարելագործման, կորպորատիվ կառավարման, առևտր. բանկերի գործունեության հարցերին:

ՍՈՒՎԱՐՅԱՆ Յուրի Միքայելի (ծ. 1943), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (1984), պրոֆ. (1986): ՀՀ ԳԱԱ ակադ. (2010, թղթ անդամ՝ 2006-ից): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2014): 2006–11-ին՝ ՀՊՏՀ ռեկտոր, «Բանբեր ՀՊՏՀ» հանդեսի գլխ. խմբ., 2011-ից՝ ՀՀ ԳԱԱ հայագիտ-յան և հաս. գիտ-յունների ակադ. քարտուղար: Աշխ-ները վերաբերում են տնտեսագիտ-յան և կառավարման հիմնարար խնդիրներին: Ս-ի «Հայ կառավարչական մտքի պատմության ուրվագծեր» (2005), «Հանրային կառավարման տեսություն և պատմություն» (2013, անգլ.՝ 2014), «Տնտեսություն, գիտություն, կրթություն» (2014), «Պետական և մունիցիպալ կառավարում» (2017) աշխ-ները ոլորտի առաջին մեծածավալ հետազոտություններից են:

ՀՀ «Անանիա Շիրակացի» (2000), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի (2011), ԼՂՀ «Մայրական երախտագիտության» (2007), «Վաչագան Բարեպաշտ» (2013) մեդալներ:

ՍՈՒՎՈՆ, ք. Կորեայի Հանրապետությունում, Կյոնգիդո պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,42 մլն (2010): Խոշոր արդ. կենտրոն է:

ՍՈՒՎՈՐՈՎ Ալեքսանդր Վասիլևիչ (1730–1800), Ռիմնիկյան կոմս (1789), Իտալիայի իշխան (1799), ռուս զորավար, գեներալիսիմուս (1799): Ծառայությունն սկսել է 1748-ին՝ որպես կապրալ: Մասնակցել է Յոթնամյա պատերազմին (1756–63): Ռուս-թուրք. պատերազմների ժամանակ (1768–74 և 1787–91) հաղթել է Կոզլուջայի (1774), Կինբուռնի (1787), Ֆոկշանի (1789), Ռիմնիկի մարտերում (1789) և գրոհով գրավել է (1790) Իզմայիլ ամրոցը: 1778–79 և 1782–84-ին՝ զորքերի հրամ. Կուբանում ու Ղրիմում, Ղրիմից գաղթեցրել է քրիստ. բնակչությանը. հույներին՝ Ազովի ծովափ, հայերին՝ Դոնի Ռոստովի մոտ: 1794-ին ղեկավարել է Լեհ. ապստամբությունը ճնշող զորքերը: 1799-ին գլխավորել է Իտալ. և Շվեյցար. արշավանքները, ջախջախել է ֆրանս. զորքերին, և անցնելով Շվեյցար. Ալպերը՝ դուրս է եկել շրջապատումից: Հեղինակ է ռազմատես. աշխ-ների: Ստեղծել է զորքերի ուսուցման և դաստիարակության առաջավոր համակարգ: Կատարելագործել է զորայուների տակտիկան՝ նրանց գործողությունները զուգակցելով գրիվ զորակարգի գործողությունների հետ: Ս-ի ռազմավարությունը հարձակողական է: Չի պարտվել ոչ մի ճակատամարտում:

ՍՈՒՎՈՐՈՎ Նիկոլայ Գեորգևիչ (1889–1972), ռուս. կինոյի նկարիչ: ՌԽՖՍՀ ժող. նկարիչ (1969): Ձևավորել է «Ոսկե լեռներ» (1931), «Բալթիկայի դեպուտատը» (1937), «Պետրոս I» (1937–39), «Մեծ բեկում» (1945), «Օտար ազգականներ» (1956) և այլ ֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1951):

ՍՈՒՏԱՂ, միներալ, կորունդի թափանցիկ տարատեսակը: Վարդագույնից մինչև թունդ կարմիր է: 1-ին կարգի թանկարժեք քար է: Հանքավայրեր կան Սյանմայում, Աֆղանստանում, Հնդկաստանում ևն: Արհեստ. Ս-ներն օգտագործվում են ոսկերչության մեջ, քվանտ. էլեկտրոնիկայում, ժամացույցների արտադր-յունում ևն:

ՍՈՒՏՈՒ, **բասուտո,** բանտու խմբի ժողդ, Լեսոթոյի հիմն. բնակչությունը (2 մլն, 2010): Ապրում են նաև ՀԱՀ-ում (3,6 մլն, 2001): Լեզուն՝ սուտո: Հավատացյալները հիմնականում քրիստոնյա են:

ՍՈՒՏՐԱ (սանսկրիտ – թել, գիծ, շարան), հինդ. գրկ-յան մեջ հակիրճ ու համառոտ արտահայտություն (ասույթ), հետագայում՝ ասույթների հավաքածու: Ս-ում շարադրված են տարբեր բնագավառների գիտելիքների, հիմնականում՝ Հին Հնդկաստանի փիլ-կրոն. ուսմունքները:

ՍՈՒՔ, կտրող, հազվադեպ՝ կտրող-խոցող, երկար կեռ կամ ուղիղ շեղբով սառը զենք: Ամենահին գտածո Ս-երը VII դ-ի վերջի են: Եվրոպայում հայտնի է VIII դ-ից, XIX դ-ի վերջերին փոխարինվել է թրով և պահպանվել միայն որպես շքերթային և պարգևատրման զենք: Որոշ երկրների բանակներում պահպանվել է որպես զենք մինչև ԵՀՊ-ի ավարտը: Հայկ. լ-աշխարհում բրոնզե տարատեսակ Ս-եր հայտնաբերվել են մ. թ. ա. II հզ-ամյակի հնավայրերից (Լճաշեն, Արթիկ ևն): Միջին դարերում պողպատե Ս. եղել է Հայոց զորքերի հիմն. զինատեսակներից: Հայ մատենագիտ-յան մեջ Ս-երն անվանվել են «երկսայրի», «պողովատ», «պողովատիկ»:

ՍՈՒՔ ՈՐՈՎԱՅԻՆ, որովայնի խոռոչի օրգանների հիվանդությունների և վնասվածքների ծանր ընթացքի կլինիկ. վիճակի պայման. անվանումը: Բնորոշվում է որովայնի հանկարծակի սուր ցավերով, որովայնի առաջային պատի մկանների լարվածությամբ և որովայնամզի գրգռվածությամբ: Նկատվում է որդանման ելունի, լեղապարկի սուր բորբոքումների, աղիների անանցանելիության, ստամոքսի խոցի թափածակման, ճողվածքի ճմլման, արտարգանդային հղիության (ձվարանների, արգանդափողերի պատռվածքի) դեպքերում: Ս. ո-ի դեպքերի մեծ մասը ենթակա է վիրահատության:

ՍՈՒՐԱԲԱՅԱ (Surabaya), ք-նվինգստ Ինդոնեզիայի Ճավա կղզում, Արլ. Ճավա պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 2,77 մլն (2010): Մաղուրա կղզու հետ կապված է լաստանավ. հաղորդակցությամբ:

ՍՈՒՐԱԲԵԿՈՎ Վալերիան Հովսեփի (1904–1986), խորհրդ. բանակի փոխծովակալ (1962): Ռազմածով. գիտ. թեկնածու (1958): Ծառայել է Կասպիական, Բալթյան, 1934–49-ին՝ Խաղաղօվկիանոս. ռազմ. նավատորմերում, 1933-ից՝ սուզանավի, 1942-ի ապրիլից՝ ռազմածով. բազայի հրամ.: 1945-ին, որպես Սախալինյան ռազմ. նավատորմիղի շտաբի պետ, մասնակցել է Ճապոնիայի ջախջախմանը: 1952-ից՝ Ռազմ. ակադ-ում: Զորացրվել է 1965-ին:

Լենինի, ԽՍՀՄ Կարմիր դրոշի (3), Կարմիր աստղի (2) շքանշաններ:

ՍՈՒՐԱԲՅԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ, դրամատոպերետ. խումբ, գործել է 1923–55-ին ԱՄՆ-ում: Հիմն. ուժերն էին **Սեդրակ Սուրաբյանը** (Բաղդասարյան, 1896–1956), գործել է 1912-ից Թիֆլիսում, կինը՝ **Մաշա Սուրաբյանը** (Դավթյան, 1899–1989), 1918-ից՝ Եկատերինոդարում (այժմ՝ Կրասնոդար): Միասին գործել են 1918-ից Կովկասում, 1919-ից՝ Կ. Պոլսում, 1923-ից՝ ԱՄՆ-ում: Խաղացանկում՝ դրամաներ և օպերետներ (Գ. Սունդուկյանի «Պեպո», Ա. Տիգրանյանի «Անուշ», Ի. Կալմանի «Սիլվա» ևն):

ՍՈՒՐԱԿԱՐՏԱ, **Սոլո** (Surakarta, Solo), սուլթանություն Ճավա կղզում (Ինդոնեզիա) XVIII դ-ի կեսերից մինչև 1950-ը: Մտել է Ինդոնեզիա Հանրապետության Կենտր. Ճավա պրովինցիայի կազմի մեջ:

ՍՈՒՐԱԿԱՐՏԱ, **Սոլո**, ք. Ինդոնեզիայում՝ Ճավա կղզում՝ Սոլո գետի ափին: Բն.՝ 566 հզ. (2010): Ավանդ. գեղ. արհեստների կենտրոն է: Կան մզկիթ (XVI), տիրակալների ամրոց-պալատ (XVIII դ.)՝ կրատոն:

ՍՈՒՐԱՄԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Լիխիի լեռնաշղթա, Վրաստանում: Միացնում է Մեծ և Փոքր Կովկասները, բաժանում Կոլխիդայի դաշտավայրը Կուրի իջվածքից: Բարձր.՝ մինչև 1926 *մ*: Լանջերը ծածկված են լայնատերև անտառներով: Առավել ցածր լ–անցքը Սուրամի լ–անցքն է (949 *մ*), որով անցնում է Խաշուր–Զեստաֆոն երկթղ. և ավտոճանապարհը:

ՍՈՒՐԱՊԱՏԻ (Surapati, մոտ 1660–1706), Ինդոնեզիայի Ազգ. հերոս, հակագաղութ. շարժման ղեկ. (1680–ական թթ– XVIII դ–ի սկիզբ) ճավա կղզում:

ՍՈՒՐԱՍ, ք–ն Վիննգստ Հադկաստանի Գուջարաթ նահանգ–ում՝ Տապտի գետի գետաբերանում: Բն.՝ 4,46 մլն (2011): Զարգացած է արհեստագործությունը: Հնդկաստանում անգլ. 1–ին առևտր. հենակետը հիմնադրվել է Ս–ում 1613–ին:

ՍՈՒՐԲ ԳԱՅԱՆԵ ԵԿԵՂԵՑԻ, գմբեթավոր տիպի բազիլիկ եկեղեցի Էջմիածնում (630): Կառուցել է Եզր կաթողիկոսը Գայանե կույսի շիրիմի վրա՝ մատուռի (IV դ.) տեղում: Ավագ խորանին 2 կողմից կից են խաչաձև թաղերով ավանդատները: Ուշագրավ է հատակագծ. և արտաքին ճարտ. ձևերի պարզությամբ, ներսը հանդիսավոր է և տպավորիչ: Արմ. ճակատին կից կառուցվել է եռավեմար սրահ (1683): Եկեղեցու հարևանությամբ գերեզմանոցում թաղված են հայ եկեղեցու և մշակույթի բազմաթիվ հայտնի մարդիկ [Րաֆֆու «Խենթ» վեպի գլխ. հերոսի՝ Վարդանի նախատիպը՝ Սամսոն Տեր–Պողոսյանը (Խենթ), երգչուհի Լուսինե Զաքարյանը և ուր.]:

ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳԻ ՆԵՂՈՒՅ (Saint George's Channel), **Հարավային ջրանցք**, Մեծ Բրիտանիա և Իռլանդիա կղզիների միջև: Իռլանդ. ծովը կապում է Ատլանտ. օվկիան: Երկ.՝ 185 *կմ*, լայն.՝ մինչև 92 *կմ*, խոր. նավարկուղում՝ 55 *մ*:

ՍՈՒՐԲ ԳԻՐՔ, գիրք կամ գրքերի ժող. թեիստ. կրոններում, որտեղ ամփոփված են դավանաբանության առանցք. դրույթները (*Ասրվածաշունչ*՝ քրիստոնեության, *Ղուրանը*՝ մահմեդականության, Թանախը՝ հուդայականության, *Ավեստան*՝ զրադաշտականության մեջ, ևն):

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ, ճարտ. հուշարձան: Կառուցվել է 1996–2001–ին Երևանում (ճարտ.՝ Ստեփան *Քյուրքչյան*): Բաղկացած է Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուց, Սբ Տրդատ և Սբ Աշխեն մատուռներից, գավթից և զանգակատնից: Ամենախոշոր հայկ. եկեղեցին է (արտաքին չափերը՝ 58x58 *մ*, բարձր. մինչև խաչի տակ՝ 56 *մ*): Ծածկը 2 զույգ փոխհատվող կամարների (38 *մ* թռիչքով, իրարից 16 *մ* հեռությամբ) համակարգ է: Աղոթասրահը (1300 *մ*^{2}) տեղավորում է 3000 մարդ, 1700–ը՝ նստատեղով: Արմ–ում վերնահարկ–պատշգամբն է՝ երգեհոնի և երգչախմբի համար: Եկեղեցու տակ՝ ներքնահարկում, Սբ Գրիգոր Լուսավորչի հուշահամալիրն է, գրադարանը, հանդեսների և դասախոսությունների դահլիճները, աշխատասենյակները: Մատուռները նախատեսված են հարանյաց հանդեսների, կնունքների, հոգեհանգստի ննի համար: Գավիթն ութանիստ սրահ է, որին կից է զանգակատունը (8 x 8 *մ*)՝ 22 *մ* բարձր–յան աշտարակ՝ պսակված 5 *մ* բարձր–յան քարե թևավոր խաչով: Եկեղեցին ունի հայկ. դաս. ճարտ–յանը բնորոշ նկարագիր, միաժամանակ արդիական է և նման չէ միջնադար. որևէ եկեղեցու:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Հայկ. լ–աշխարհում՝ Հս. Հայկ. Տավրոս լեռն. համակարգի հս–արմ–ում, Չիմեն լ–շղթայի հվ–արլ. ճյուղը: Երկ.՝ մոտ 60 *կմ*: Բարձր.՝ մինչև 3537 *մ* (Սբ Գրիգոր լ.): Արլ–ում հատվում է Եփրատի խորը կիրճով: Տարածված են ալպ. և ենթալպ. մարգագետինները բարձրլեռն. գոտում՝ ձնամերձ լանդշաֆտը:

ՍՈՒՐԲ ԸՆՏԱՆԻՔ, քրիստ. պատկերացումներում՝ ընտանիք, որտեղ ծնվել է *Հիսուս Քրիստոսը:* Ս. ը–ում ներառված են Հիսուսի մանկության տարիների մերձավորները, որոնց թվում՝ Մարիամ Աստվածածինը և նրա ամուսին Հովսեփը:

«ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ», ՀԱԵ Հորդանանի ազգ. առաջնորդարանի պաշտոնաթերթ (1997–ից, Ամման):

ՍՈՒՐԲ ԻԲԻՍ, *իբիսների* ընտանիքի թռչուն: Երկ.՝ մոտ 75 *սմ*: Աֆրիկայում (Սահարայից հվ), Մադագասկար կղզում, Արաբ. թ–կղզու հվ–ում, XX դ–ի կեսին տարածվել է Ավստրալիայում: Մինչև XIX դ. ապրել է Եգիպտոսում, որտեղ հնում համարել են սուրբ թռչուն, քանի որ նրա գալը համընկել է Նեղոսի հորդացման հետ:

ՍՈՒՐԲ ԼԱՎՐԵՆՏԻՈՍ (Saint Lawrence River), գետ Կանադայում (վերին հոսանքում սահմանային է ԱՄՆ–ի և Կանադայի միջև): Երկ.՝ մոտ 1200 *կմ*, ավազանը՝ 1290 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ շուրջ 14 հզ. *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Օնտարիո լճից, թափվում է Սբ Լավրենտիոսի ծոցը: Զրանցքներով կապված է Հուդզոն գետին: Ափին են Քինգստոն, Քոռնուոլ, Մոնրեալ, Սորել, Թրուա Ռիվիեր, Քվեբեկ ք–ները ու նվինգստ–ները: Գործում են ջրէկներ:

ՍՈՒՐԲ ԼԱՎՐԵՆՏԻՈՍԻ ԿՂԶԻ (Saint Lawrence Island), Բերինգի ծովի հս–ում՝ ԱՄՆ Ալյասկա նահանգ–ում: Տարածքը՝ շուրջ 5 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,3 հզ. (2010): Բարձր.՝ մինչև 673 *մ*: Բնակավայրերը՝ Գամբել, Սավունգա:

ՍՈՒՐԲ ԼՈՒՅՍԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Հայկ. լ–աշխարհում, Ներքին Տավրոսի հվ. լ–շղթաներից: Սկսվում է Մերջան լ–շղթայից և ձգվում հվ մոտ 80 *կմ* և հասնում Մնձուր ու Փերի (Ջղի) գետերի միախառնման վայր: Լանջերն անտառապատ են, խիստ զառիթափ և մասնատված խորը հովիտներով ու կիրճերով: Զրբաժան. հատվածներում լեռն. մարգագետիններ են:

ՍՈՒՐԲ ԽԱՉ, ճարտ. հուշարձան Մեծ Հայքի Տայք նահանգ–ի Ճակք գվո–ում: Քառախրան գմբեթավոր եկեղեցի է (V–VI դդ.), որի խաչաթևերից 3–ը կիսաշրջանաձև են, իսկ արմ–ը՝ ուղղանկյուն:

«ՍՈՒՐԲ ԽԱՉ», պատմամշակութ. եռամսյա հանդես (1996–ից, Սիմֆերոպոլ՝ ռուս.): Ղրիմահայոց ընկ–յան հրտ–յուն:

ՍՈՒՐԲ ԽԱՉ, Սբխեչ, Խաչվերաց:

ՍՈՒՐԲ ԽԱՉ ԴՊՐԵՎԱՆՔ, բարձրագույն դպրոց: Հիմնադրվել է 1953–ին Կ. Պոլսի Սկյուտար թաղամասում՝ Գարեգին արք. *Խաչատրյանի* ջանքերով: Սկզբնական շրջանում՝ գիշերօթիկ վարժարան՝ միջնակարգի և լիցեյի (6–ամյա), աստվածարան–ընծայարանի (3–ամյա) բաժիններով: 1998–ից՝ երկսեռ լիցեյ, ուսման տևողությունը՝ 4 տարի:

ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՎԵՐԱՅՄԱՆ ՏՈՆ, Խաչվերաց, Սբխեչ, ՀԱԵ 5 Տաղավար (վերջին) և Խաչի 4 տոներից: Կատարվում է սեպտ. 14–ի մոտակա կիրակի օրը (սեպտ. 11–17–ի միջակայքում): Խաչի տոներից ամենահինն է, վերագրվում է Երուսաղեմի առաջին եպս. Հակոբոս Տեառնեղբորը, որը Խաչն ի տես ժողդ–ի բարձրացնելով՝ «Խաչի քո, Քրիստոս, երկրպագեմք» օրհնությունն ու աղոթքն է ասել: Հայ և Ընդհանր. եկեղեցիներում տոնը հաստատվել է IV դ–ում: Տոնի 2–րդ խորհուրդը Խաչի գյուտն է, երբ Բյուզանդիայի Կոստանդինոս կայսեր մայրը՝ Հեղինե թագուհին, այն գտել և մեծ շուքով զետեղել է Երուսաղեմի Սբ Հարության տաճարում: 3–րդ խորհուրդը Խաչի վերադարձն է, երբ 628–ին Բյուզանդիայի Հերակլ կայսրը Տիգրոնից վերադարձրել է Պարսից Խոսրով II–ի՝ 614–ին գերեվարած Խաչափայտը:

Սբ Էջմիածնում, ի տես ժողդ–ի, բարձրացվում է Քրիստոսի Խաչափայտի մասունքով ճաճանչավոր մի խաչ, որը պահվում է Մայր աթոռի թանգարանում:

ՍՈՒՐԲ ՀԵԼԻՆԵԻ ԿՂԶԻ (Saint Helen Island), կղզի Ատլանտ. օվկ–ի հվ. մասում, Մեծ Բրիտանիայի տիրույթ: Տարածքը՝ 122 *կմ*^{2}, բն.՝ 4,5 հզ. (2015): Գլխ. ք–ն ու նվինգստ–ը՝ Ջեյմսթաուն: Հվ. մասում կան հանգած հրաբուխների խառնարաններ: Բարձր.՝ մինչև 818 *մ*: Հայտնագործել են պորտուգալացիները 1502–ին: Նապոլեոն I–ը 1815–ին աքսորվել և մահացել է (1821) Ս. Հ. կ–ում:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ, քրիստոնեության մեջ Սուրբ *Երրորդության* երրորդ անձը (հիպոստաս): *Նոր կրակարանում* Ս. Հ. ներկայացվել է աղավնու (Մկրտության ժամանակ), կրակի լեզուների (Ս. Հ–ու իջնելն առաքյալների վրա հոգեգալստյան տոնին) կերպարանքներով: Ըստ քրիստ. դավանաբանության՝ Ս. Հ. Եկեղեցում է լինում և հաղորդվում է հավատացյալներին եկեղեց. խորհուրդների միջոցով:

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ, կղզի Ադրիատիկ ծովում՝ Վենետիկից 4 *կմ* հվ: 1182–ին կղզում հիմնադրվել է Սբ Ղազար եկեղեցին: 1715–ին Ս. Ղ–ում հաստատվել է *Միսիթար Սեբաստացին*, որի խնդրանքով Վենետիկի Հանրապետության Ծերակույտը 1717–ի օգոստ. 26–ի պայմանագրով կղզին շնորհել է ՄՄ–ին: Այնտեղ հաստատված միաբանությունը հիմնովին բարենորոգել է Սբ Ղազար եկեղեցին, հիմնել երկհարկանի վանք, գրատուն, վարժարան ևն: 1833–ին ավստր. կառ–յունից (որին անցել էր կղզին) միաբանությունը գնել է կղզին և դարձրել իր սեփականությունը: 1788–ին Ս. Ղ–ում հիմնվել է սեփ. տպարան և կազմատուն, 1866–ին՝ Գրչագրաց մտնդ–ը, 1869–75–ին՝ Գիտ–յունների թանգարանը ևն: Հանրաճանաչ այցելուներից են եղել Զ. Բայրոնը (1816), Վ. Սքոթը (1832), Ա. դը Մյուսեն (1834), Ժ. Սանդը (1834), Հ. Այվազովսկին (1869), Է. Դուզեն (1886) և շատ ուր.:

ՍՈՒՐԲ ՄԱՐԿՈՍԻ ՏԱՃԱՐ (Basilica di San Marco), Վենետիկում, հուն. 5–գմբեթանի խաչաձև տաճարի տիպ: Կառուցվել է 829–ից, վերակառուցվել 1063–ից հետո՝ Կ. Պոլսի Առաքելոց տաճարի (չի պահպանվել) նմանությամբ: Գլխ. սրբությունը առաքյալների և Սբ Մարկոսի մասունքներն են (Ալեքսանդրիայից բերվել են IX դ–ում): Ներսում խճանկար է (XI–XIV դդ.), զոհարանը՝ Պալա դ'Օբրոյի օրինակով (X–XIV դդ.): Թանգարանում է բրոնզե մրցակառքը (մ. թ. ա. IV դ.): Զանգակա–

տունն առանձին է (888, վերականգնվել է 1903–12-ին): Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍԻ ՏԱՃԱՐ, **Սուրբ Պետրոսի բազիլիկ** (Basilica di Can Pietro), Հռոմում, Վերածննդի և բարոկկոյի շրջանի ճարտ. հուշարձան: Հռոմի պապ. բազիլիկներից Վատիկանում: Կառուցվել է 1506–1614-ին (ճարտ-ներ՝ Դ. Բրամանտե, Ռաֆայել, Բ. Պերուցցի, Ա. Կրտսեր Սանգալլո, Միքելանջելո և ուր.): Օգտագործվել են մեծ գմբեթով կենտր. (ճարտ.՝ Ֆ. դելլա Պորտա) և լատ. խաչաձև (արմ. մասի ճարտ.՝ Կ. Մադեռնա) տաճարների գաղափարը: Քանդակազարդվել է XIII դ–ից: Արմ. ճակատի առջև Սբ Պետրոսի ձվաձիր հրապարակն է (ճարտ.՝ Ջ. Լ. Բեռնինի): Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է: Տաճարի արտաքին պատի որմնախորշում 2005-ին տեղադրվել է Սբ Գրիգոր Լուսավորչի հուշարձանը (քանդ.՝ Խաչիկ Ղազանչյան):

ՍՈՒՐԲ ՊՈՂՈՍԻ ՏԱՃԱՐ (St. Paul's Cathedral), Լոնդոնում, անգլ. կլասիցիզմի ճարտ. հուշարձան: Կառուցվել է (ճարտ.՝ Ք. Ռեն, 1675–1711) VII–XIII դդ–ի տաճարների տեղում: Տաճարը պսակված է մեծ գմբեթով (Հռոմի Սբ Պետրոսի տաճարի օրինակով), ունի 3 սյունասրահ: Արմ. երկաշտարակավոր ճակատին կից է կոթող. երկհարկ նախասրահը, որտեղ թաղված են բրիտանացի նշանավոր անձինք:

ՍՈՒՐԲ ՍՈՖԻԱՅԻ ՏԱՃԱՐ, 1. **Այա Սոֆիա**, բյուզ. ճարտ. հուշարձան Ստամբուլում (Կ. Պոլսում): Կառուցվել է 532–537-ին (ճարտ-ներ՝ Իսիդորոս Միլեթացի, Անթեմիոս Տրալացի): Երկրաշարժից փլված արմ. մասը և գմբեթը վերակառուցել է ճարտ. *Տրդատը*: Եռանավ բազիլիկ է՝ խարսխված առագաստների վրա՝ կիսագմբեթի բարդ համակարգով: Խճանկարները VI–XII դդ–ի են: Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

2. Կիևում հին ռուս. ճարտ. հուշարձան, Կիևյան Ռուսիայի մետրոպոլիտների գլխ. տաճարը: Կառուցվել է 1037-ին: Հնգանավ, հնգախորան, 13-գմբեթանի խաչաձև-գմբեթավոր կառույց է՝ 3 կողմից շրջապատված երկհարկանի սրահով, որին ներկցված է 2 աշտարակ: Պահպանվել են XI դ–ի խճանկարներ և որմնանկարներ: 1934–ից՝ թանգարան-արգելոց, ապա փոխանցվել է ՌՈՒԵ-ին: Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

3. Նովգորոդում ռուս. ճարտ. հուշարձան: Կառուցվել է 1045–50-ին: Հնգանավ, 5-գմբեթանի խաչաձև-գմբեթավոր կառույց է՝ 3 կողմից շրջապատված երկհարկանի սրահներով, ներկցված է գմբեթավարտ զանգվածեղ աշտարակով: Պահպանվել են XI–XII դդ–ի որմնանկարների հատվածներ, XIV–XV դդ–ի սրբապատկերներ: Եղել է Նովգորոդի պատմաճարտ. թանգարան-արգելոցի կազմում, 1991-ին փոխանցվել է ՌՈՒԵ-ին:

«ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ», բժշկ., գր., գիտ. ամսաթերթ [1949–ից, Ստամբուլ՝ հայ., թուրք. (2010–ից)]: *«Սուրբ փրկիչ» հայոց հիվանդանոցի* պաշտոնաթերթ: Խմբ-ներ՝ Արփիար Տեր-Մարգարյան, Մկրտիչ Հագյան, Հերմինե Սինանյան, Կարպիս Մուրադյան, Մաքրուհի Հակոբյան, Արսեն Յարման (2010–ից):

«ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ» ՀԱՅՈՑ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ, առողջապ. մասնավոր հաստատություն Կ. Պոլսում: Հիմնադրվել է 1832-ին՝ Հարություն *Պէզճեանի* նախաձեռնությամբ և նյութ. աջակցությամբ: Գործում է 1834–ից: Ունի պոլիկլինիկա, ծննդատուն, մտավոր հիվանդների բաժանմունք, ծերանոց, դեղատուն, լաբորատորիաներ, եկեղեց. համալիր (1906–ից), գրադարան, օժանդակ տնտ. արտադրամաս, կալվածներ: Լույս է ընծայում *«Սուրբ Փրկիչ»* ամսաթերթը:

ՍՈՒՐԲԱՐԱՆ (Zurbaran) Ֆրանսիսկո (1598–1664), իսպանացի գեղանկարիչ: Կոմպոզիցիաների և կերպարների խիստ մոնումենտալիզմը զուգակցել է առարկայական ֆակտուրայի նուրբ գուներանգի մանրազնին փոխանցման հետ (նկարաշար Սբ Բոնավենտուրայի կյանքից, 1629): Հեղինակ է նաև դիմանկարների, նատյուրմորտների, դից. թեմաներով նկարների:

ՍՈՒՐԳՈՒՏ, ք. (1965–ից) ՌԴ Խանտի-Մանսիական ԻՕ-ում, նվինգատ Օբ գետի ափին: Բն.՝ 298,4 հզ. (2009): Նավթ- և գազարդյունահանման շրջանի կենտրոնն է: Հիմնադրվել է 1594-ին, եղել է Սիբիրի ռուս. գաղութացման կենտրոնը:

ՍՈՒՐԴԱՄ (մոտ 1478–մոտ 1583), հնդիկ բանաստեղծ, երգիչ, քարոզիչ: Գրել է բանաստեղծություններ բրաջով (հինդիի բարբառ): Հեղինակ է «Սուրդասի ծովի պոեզիան» քնարաէպիկ. պոեմի, որտեղ պատկերել է հնդ. գյուղի կյանքը, հավատալիքները:

ՍՈՒՐԴՈՒԽՅԻԿ (լատ.՝ surdus – խուլ), ձայնանթափանց պատերով շենք, որտեղ անցկացնում են ֆիզիոլոգ., հոգեբ. և այլ բնույթի հետազոտություններ, նաև մարզումներ (օր.՝ տիեզերագնացների պատրաստման ժամանակ)՝ ձայն. գրգիռների բացակայության պայմաններում:

ՍՈՒՐԴՈՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ (< լատ. surdus – խուլ և *մանկավարժություն*), *արատաբանության* բնագավառ. զբաղվում է լսողության խանգարումներով (խուլ, թույլ լսող, ուշ խլացած) երեխաների ուսուցման և դաստիարակության խնդիրներով: Կապված է հատուկ մանկավարժության մյուս բնագավառների, նաև ընդհ. մանկավարժ., բժշկ., կենսբ., սուրդոտեխ., լեզվաբ. գիտ-յունների հետ:

ՀՀ-ում գործում է լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ գիշերօթիկ կրթահամալիր (հիմնադրվել է 1931-ին Երևանում): 2005–06 ուս. տարուց ՀՀ 15 հատուկ դպրոցներում ներդրվել է ժեստերի լեզուն՝ որպես ուս. առարկա: Տես նաև *Հայաստանի խուլերի միավորում*:

ՍՈՒՐԵՆՅԱՆ (Սարկավագյան) Կարպիս Հովհաննեսի (1925–2011), արձակագիր, թարգմանիչ: Հայրենադարձել է 1946-ին: Հեղինակ է «Բնիկ ոչրտեղացի եք» (1969), «Արևորդիներ» (1979), «Երանության կղզին» (1986), «Ճիշտը կյանքն է» (2001), «Աբսուրդը» (2010), «Հայ լինելու առեղծվածը. Էսսեներ» (2012) վիպակների, պատմվածքների, էսսեների ժող-ների, «Հին պատմություն» (1999) ինքնակենսագր. վեպի, «Օրագիր, 1943–2001» (հ. 1, 2, 2005, 2007) հուշագրության, «Դոստոևսկու գաղտնիքը» (2007) աշխ-յան:

ՀԳՄ Ե. Չարենցի անվ. (1982), Մ. Նալբանդյանի անվ. (2006) մրց-ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2001), ՀԱԵ «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշան (2004):

ՍՈՒՐԵՆՅԱՆ (Մարտիրոսյան) Սուրեն Մարտիրոսի (1900–1938), դերասան: 1916-ին խաղացել է Բաքվի Հայոց մշակութ. միության, 1918-ին՝ Օվի *Սևումյանի* Պյատիգորսկի թատերախմբերում: 1924-ին Բաքվում հիմնադրել է թատերախումբ: 1928-ից՝ Լենինականի պետթատրոնի հիմնադիր դերասաններից (Սեյրան՝ Շիրվանզադեի «Նամուս», Դոն Գուան՝ Ա. Ս. Պուշկինի «Քարե հյուրը», Ֆերդինանդ՝ Ֆ. Շիլլերի «Սեր և խարդավանք», ևն):

ՍՈՒՐԵՆՅԱՆՑ Վարդգես Հակոբի (1866–1921), նկարիչ, արվ-ի տեսաբան, թարգմանիչ: Գեղանկարչության մեջ հայկ. պատմ. ժանրի հիմնադիրն է, փայլուն դիմանկարիչ, արևելահայ կերպարվ-ի խոշորագույն գրաֆիկն ու առաջին բեմանկարիչը: Լավագույն գործերից են՝ «Լքյալը», «Ոտնահարված սրբություն» (1895), «Հոիփսիմեի վանքը Էջմիածնի մոտ» (1897), «Շամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ» (1899), «Մկրտիչ Խրիմյան» (1906), «Սալոմե» (1907) ևն: Ձևավորել է գրքեր՝ Վ. Յ. Բրյուսովի կազմած «Հայ պոեզիան...» (ռուս., 1916, Մ. Սարյանի հետ) ժող-ը, Օ. Ուայլդի «Արքայադստեր ծննդյան տոնը» հեքիաթը (1909) ևն, թատեր. (Ա. Պ. Չեխովի «Ճայ», 1905, Գ. Հեյբերգի «Սիրո ողբերգություն», 1907, ևն) և օպեր. (Ա. Ռուբինշտեյնի «Դև», 1901, ևն) բեմադրությունները: Բնագրից թարգմանել է Վ. Շեքսպիրի գործերից:

«ՍՈՒՐԻԱ», քաղ., գր. օրաթերթ (1946–60, Հալեպ): Խմբ-ներ՝ Մատթեոս Երեցյան, Ֆերուզ Խանզատյան, Հարություն Տեր-Ղազարյան:

«ՍՈՒՐԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ», ազգ., հաս., գր. պարբերաթերթ (1922–27, Հալեպ): Հսկակ. կուս-յան Սիրիայի շրջանակի պաշտոնաթերթ: Խմբ-ներ՝ Հայկ Թորոսյան, Վարդ Մեխակ, Էդվարդ Ոսկերչյան, Սարգիս Տխրունի:

«ՍՈՒՐԻՀԱՅ ՏԱՐԵԳՈՅՑ», ազգ., գրգեղ., գիտ., պատմ. տարեգիրք (2 գիրք, 1924, Կահիրե, 1925, Հալեպ): Կազմողներ՝ Միհրան Ամեմյան, Միսաք Սիսեոյան, Էդվարդ Ոսկերչյան:

ՍՈՒՐԻԿՈՎ Վասիլի Իվանովիչ (1848–1916), ռուս. նկարիչ: Պերեդվիժնիկ: Մոնումենտալ կտավներում բացահայտել է Ռուսաստանի պատմության բեկումն. պահերը և լարված բախումները, որպես գլխ. հերոս ներկայացրել է վառ անհատականությամբ ժող. զանգվածին («Ստրելեցների մահապատժի առավոտը», 1881, «Մենշիկովը Բերյոզովոյում», 1883, «Բոյարուհի Մորոզովան», 1887, «Երմակի՝ Սիբիրի նվաճումը», 1895): Ս-ի մի շարք դիմանկարների էսքիզներ, նաև «Ստեպան Ռազին» նկարի էսքիզը ՀԱՊ-ում են:

ՍՈՒՐԻՆԱՄ (Suriname), **Սուրինամի Հանրապետություն** (Republiek Suriname), պետություն Հվ. Ամերիկայում: Սահմանակից է Գայանային, Ֆրանս. Գվիանային և Բրազիլիային: Տարածքը՝ 163,3 հզ. *կմ²*, բն.՝ 481 հզ. (2009): Մայրաքաղաքը՝ *Պարամարիբո*: Պետ. լեզուն՝ նիդեռլ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը (Պետ. ժողով): Հավատացյալների մեծ մասը հնդուական և քրիստոնյա է: Բաժանված է 10 վարչ. օկրուգների: Անդամակցում է ՄԱԿ-ին, Լատ. Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրների ընկերակցությանը: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 9 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է ալյումին, նավթ, ոսկի,

անտառանյութ, ձուկ, ծովախեցգետին, բանան, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ սուրինամյան դոլար:

Ս–ի տարածքի բնիկները եղել են հնդկացիները: 1551–ին հոլանդացի առևտրականները Սուրինամի գետաբերանում հիմնել են բնակավայր: XVI դ–ի վերջին երկրի տարածքը զավթել են իսպանացիները, 1630–ին՝ անգլիացիները, 1667–ին՝ հոլանդացիները: 1954–ին ստացել է ինքնավարություն, անկախություն ձեռք է բերել 1975–ին: 1980–ին տեղի է ունեցել զինված հեղաշրջում, իշխանությունն անցել է զինվորականներին, որոնք կառավարել են բռնաճնշումներով: 1987–ին միջազգ. ճնշմամբ երկրում վերականգնվել է ժողովրդավարությունը: 1986–92–ին տեղի է ունեցել քաղաքաց. պատերազմ, որի արդյունքում վերականգնվել է սահմանադր. կարգը:

ՍՈՒՐԽԱԹԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, գործել է XIV–XVIII դդ–ում Ղրիմում: Տեղի Սբ Խաչ վանքում և այլ եկեղեցիներում ընդօրինակել ու նկարազարդել են բազմաթիվ ձեռագրեր: Սուրխաթում են ստեղծագործել գրիչներ ***Նատերը***, Գրիգոր Թորոսանցը, Տիրացու Երևանցին, Ասլան Արզրումցին, Վարդանը, Ստեփանոսը, Մարկոսը, Սիմեոնը և ուր., մանրանկարիչներ ***Գրիգոր Սուրիասանցը***, Նատերի որդիներ Ավետիսն ու Ստեփանոսը և ուր.: Ձեռագրեր են ստեղծվել նաև XVII դ–ի վերջին, XVIII դ–ի սկզբին (գրիչ՝ Դավիթ): Ս. գ. կ–ի ձեռագրերից ավելի քան 30–ը Մտնդ–ում են:

ՍՈՒՐԽԱԹԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՎԱՆՔ, հայկ. ճարտ. համալիր Ղրիմի Ստարի Կրիմ ք–ի մոտակայքում: Սբ Նշան եկեղեցին (1358, կառուցողներ՝ Հովհաննես կրոնավորն ու նրա եղբայրները) ներքուստ՝ խաչաձև, 4 անկյուններում՝ ավանդատներով, գմբեթավոր հորինվածք է: Բակի արմ–ում սեղանատունն է՝ կից 2 շենքերով (XVI դ–ի 2–րդ կես): Սբ Նշան եկեղեցում պահպանվել են XIV դ–ի որմնանկարներ:

ՍՈՒՐԽԱԹՅԱՆ (Թումանյան) Հարություն Սանուկի (1892–1938), գրականագետ, հրապարակախոս, մշակույթի և հաս. գործիչ: Հեղինակ է «Հին հունական գրականություն» (1922), «Հետհոկտեմբերյան հայ գրականություն» (1929), «Հոմերոս», «Շեքսպիր» (երկուսն էլ՝ 1935) աշխ–ների, «Գրականության հարցեր» (1970) ժող–ի: Անհիմն բռնադատվել է, մահացել է աքսորում, հետմահու՝ արդարացվել:

ՍՈՒՐԿՈՎ, Ալեքսեյ Ալեքսանդրովիչ (1899–1983), ռուս բանաստեղծ, հաս. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1969): ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1969): Հեղինակ է «Հասակակիցներ» (1934), «Խաղաղություն աշխարհին» (1950) ժող–ների, հանրահայտ երգերի, այդ թվում՝ «Փոքրիկ վառարանում բոցն է թրթռում…»: Թարգմանել է հայ բանաստեղծների գործերից: Հայ. հրատարակվել է «Լիրիկա» (1975) ժող–ը:

ԽՍՀՄ Պետ. (1946, 1951), Բոտևյան մի–ջազգ. (1976) մրց–ներ:

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿ», ազգ–քաղ., տնտ., գր. օրաթերթ (1899–1908, Կ. Պոլիս): Խմբ–ներ՝ Զայրմայր (Կեզյուրյան), Տիգրան Արփիարյան, Զավեն Տիգրան, Ենովք Արմեն:

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿ», գր., հաս–քաղ. պարբերաթերթ (1909–12, Թիֆլիս): Խմբ.՝ Ասատուր Երիցյան:

ՍՈՒՐՄԱԼՈՒ, **Սուրբ Մարի, Սուրմաղի**, քք Այրարատ նահանգ–ի Ճակատք գվո–ում՝ Երասխ և Վարդամարգ գետերի միախառնման մոտ՝ Խաչասարի ստորոտին: ***Թոռմա Մեծոփեցին*** Ս–ի ամրությունների շինությունը վերագրում է ***Բագրատունիներին***: Ըստ պատմիչ Արիստակես Լաստիվերցու՝ Հայոց թագավոր Հովհաննես–Սմբատից (1020–41), այլ բերդերի թվում, ***Վեսպ Սարգիսը*** բռնատիրել է նաև Ս–ին: Ալփ–Արսլանը Ս. գրավել և վերածել է թուրք. զորանիստի: XIII դ–ի սկզբին Ս. ազատագրել են ***Զաքարյան–ները***, 1387–ին գրավել և ավերել են Լանկ Թամուրի հրոսակները: Հետագայում վերակառուցվել է: XVI–XVIII դդ–ում եղել է պարսկ. տիրապետության ներքո, ապա՝ Երևանի խանության համանուն մահալի կենտրոնը: 1828–ին անցել է Ռուսաստանին և մինչև 1917–ը եղել Երևանի նահանգի Սուրմալու գվո–ի, 1918–20–ին՝ ՀՀ կազմում: 1920–ին Ս.՝ գվո–ի հետ, զավթել է Թուրքիան: Գվո–ի 35 հզ–ի հասնող հայությունը տեղափոխվել է Հայաստան:

ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ԴԱՇՏ, Հայկ. լ–աշխարհում՝ Միջինարաքսյան գոգավորության աջափնյա ցածրադիր (բարձր.՝ 900–1100 *մ*) մասը: Հս. սահմանն Արաքս գետն է, հվ–ը՝ Հայկ. Պարի լ–շղթան և Մեծ ու Փոքր Մասիսների հս. լանջերը: Տարածքը՝ մոտ 2800 *կմ*²: Արարատյան դաշտի շարունակությունն է: Բնորոշ է կիսաանապատ. և լ–տափաստան. լանդշաֆտը:

ՍՈՒՐՄՈՒԿՉԻ Ստեփան Գավրիլի (1862–1932), քիթկոկորդականջաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1921), պրոֆ. (1922): 1892–ին Խարկովի համալսարանի բժշկ. ֆակ–ի ներքին հիվանդությունների կլինիկայում Ս–ի նախաձեռնությամբ բացվել են քիթկոկորդականջի հիվանդությունների ամբուլատորիա և անվճար դասընթաց, 1922–28–ին՝ քիթկոկորդականջաբանության ամբիոն ու կլինիկա (1932–ից՝ Ս–ու անվամբ): Զբաղվել է նաև ներզատիչ գեղձերի ֆունկցիայի խանգարումների (անշաքար միզահյուծություն, բազեդովյան հիվանդություն) ախտորոշման և բուժման, շնչափողից ու բրոնխներից օտար մարմինների հեռացման հարցերով:

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Ալեքսեյ Գրիգորի (1907–1981), իրավաբան: Իրավաբ. գիտ. դ–ր (1963), պրոֆ. (1966): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1971): Աշխ–ները վերաբերում են հայկ. պետության և իրավունքի պատմության հարցերին:

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Աշոտ Մուրադի (1922–2007), լեզվաբան, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ–ր (1972), պրոֆ. (1974): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1981): Հեղինակ է «Հայոց լեզվի հոմանիշների բառարանի» (1967), «Հոմանիշները ժամանակակից հայերենում» (1971) աշխ–յան, «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանի» (համահեղ., 1975), «Հայոց լեզվի հոմանիշների դպրոցական–ուսումնական բառարանի» (2000), «Արդի հայերենի ուղղագրական–ձևակազմական բառարանի» (համահեղ., 2002), «Ժամանակակից հայոց լեզու» (1982) բուհ. դասագրքի: Մասնակցել է ակադեմ. քառահատոր «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» (հ. 1, 3, 1969, 1974) կազմմանը: ՀՀ նախագահի մրց. (2004):

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Արտաշես Ալեքսանդրի (1841–1895), դերասան: Հայ պրոֆեսիոնալ ռեալիստ. թատրոնի հիմնադիրներից: 1863–ից գործել է Թիֆլիսում, 1879–81–ին՝ Թիֆլիսի Հայոց մշտ. թատերախմբի դերասան (Դոն Ժուան՝ Մոլիերի «Դոն Ժուան», Հորացիո՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», ևն): Ս. եղել է Օսկան Պետրովիչի, Իսայու, Բրիլիանտովի, Իրաստծովի (Գ. Սունդուկյանի «Օսկան Պետրովիչը էն կինքումը», «Խաթաբալա», «Էլի մեկ զոհ», «Գիշերվան սարը խեր է») առաջին դերակատարը:

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Գագիկ Արամի (ծ. 1952), մատենագետ, գրադարանագետ: Մանկավարժ. գիտ. դ–ր (1997, Մոսկվա), պրոֆ. (2009): Հեղինակ է «Մատենագիտությունը Հայաստանում և հայկական սփյուռքում պատմության համատեքստի մեջ. V–XX դդ.» (ռուս., 1997), «Գրքագիտություն և հայ գրատպության պատմագրություն» (2013) և այլ աշխ–ների, մասնագիտ. ձեռնարկների: ՀՊՄՀ–ի «Խաչատուր Աբովյան» հուշամեդալ (2002):

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Գեորգի Վահրամի (1924–2005), արյունաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1966), պրոֆ. (1976): ԽՍՀՄ պատվ. դոնոր (1966): ԽՍՀՄ–ում առաջինն է մշակել ոսկրածուծի ստացման մեթոդները և կիրառել արյան հիվանդությունների բուժման նպատակով: Ուսումնասիրել է ճառագայթ. հիվանդության ժամանակ ոսկրածուծի փոխպատվաստման արդյունավետությունը: Աշակել և կլինիկայում ներդրել է արյունաստեղծ և մյուս օրգան–համակարգերի հիվանդությունների ռադիոնուկլիդ. եղանակներով ուսումնասիրությունը:

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան:

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Հակոբ Հմայակի (ծ. 1931), նկարիչ: Հեղինակ է գեղանկարչ. («Հուշ. իմ տատը», 1987, «Բարի լույս, հայեր», 2001, «Երեկոն Շիրակ աշխարհում», 2004, ևն), գրաֆիկ. («Հայկական երգ», 1998, «Վիկտոր Օհանջանյան», 2001, «Տորք Անգեղ», 2003, ևն) գործերի:

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Սամվել Հրանտի (ծ. 1957), հոգեբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1996), պրոֆ. (2001): «Սթրես» հոգեկան առողջության կենտրոնի տնօրեն (2000–11): Աշխ–ները վերաբերում են մարմնացած հոգեկան խանգարումներին, հետմասվածք. գերհույզային խանգարումներին և սոցիալ. հոգեախտաբանությանը, աթերոսկլերոզային սակավամտության կլինիկաշերտագր. հետազոտություններին: ՀՀ ԱՆ գլխ. հոգեբույժ (1999–2001), 2012–ից՝ «Արթմեդ» բժշկավերականգնող. կենտրոնի «Սթրես» կլինիկայի ղեկ.: Նյու Յորքի ԳԱ անդամ (1996), ՀՀ «Փսիխես» հոգեկան առողջության ընկ–յան հիմնադիր (1997–ից), ՀՀ կենսբ. հոգեբուժության ընկ–յան (2004–ից) նախագահ:

ԼՂՀ «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեդալ:

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Սերգեյ Սպարտակի (ծ. 1960), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (2012): Աշխ–ները վերաբերում են առևտրային բանկերի գործունեության, տնտ. կարգավորման, ֆին. շուկաների ու ծառայությունների, հիմն. միջոցների վերարտադր–յան, խնայողության հարցերին:

ՍՈՒՔԻԱՍՅԱՆՑ Պավել Ալեքի (ծ. 1962), մարզիկ (ձեռնագնդակ): ԽՍՀՄ ս. վ. վ. (1992): ԽՍՀՄ չեմպիոն (1987), Եվրոպայի գավաթակիրների (1986), չեմպիոնների գավաթի (1987) հաղթող, օլիմպ. խաղերի (1992, 2000) և աշխարհի կրկնակի (1993, 1997), Եվրոպայի (1996) չեմպիոն: 2016–


ին՝ Ռիոյի օլիմպիադիայում հաղթած ՌԴ կանանց ձեռնագնդակի հավաքականի մարզիչ:

ՍՈՒԿՐԵ, **Սուկրե** (Sucre), Անտոնիո Խոսե (1795–1830), Լատ. Ամերիկայի անկախության համար պատերազմի (1810–26) ղեկ-ներից, մարշալ (1824): Այակուչոյի մոտ (Պերու) վճռական հաղթանակ է տարել իսպ. զորքերի դեմ: Բոլիվիայի Հանրապետության նախագահ՝ 1826–28-ին:

ՍՈՒՖԼՈ (Soufflot) Ժերմեն (1713–1780), ֆրանսիացի ճարտ.: Նրա կառուցած վիթխարի գմբեթով Սենտ Ժենևվև (Փարիզ, 1775–90, 1791-ից՝ Պանթեոն) եկեղեցին առանձնանում է մասնատման պարզությամբ, հորինվածք. լուծումների համարձակությամբ, մոնումենտալությամբ:

ՍՓԱՐՔ (Spark) Մյուրիել Սառա (1918–2006), անգլիացի գրող: Հեղինակ է «Memento mori» (1959) վեպի, «Միսս Ջին Բրոուդին ծաղկուն տարիքում» (1961), «Միտումնավոր կասեցում» (1981), «Հեռավոր ճիչ Քենսինգթոնից» (1988), «Իրականություն և երազանքներ» (1996), «Բարձր դասարաններ» (2004) և այլ վեպերի, նաև վիպակների, բանաստեղծությունների, գրաքննադատ. գործերի: Հայ. հրատարակվել է «Սև տիրամայրը» (1989) ժող-ը:

«ՍՓԵՅՍ ՇԱԹԼ» (անգլ.՝ Space Shuttle – տիեզ. մաքոք), ԱՄՆ բազմակի օգտագործման օդաչուավոր տրանսպորտ. տիեզերանավ: Զանգվածը՝ մոտ 2000 *տ*, երկ.՝ 56 *մ*, 1-ին աստիճանը՝ պինդ վառելանյութով 2 հրթիռ. շարժիչներով է, 2-րդ աստիճանը (ուղեծր.) թևավոր օդաչուավոր է, որը կարող է վայրէջք կատարել «ինքնաթիռի» ռեժիմով: Առաջին թռիչքը 1981-ին՝ տիեզերագնացներով: 1976–91-ին կառուցվել է 5 տիեզերանավ՝ «Կոլումբիա» (վթարվել է 2003-ին), «Չելենջեր» (վթարվել է 1986-ին), «Դիսքավերի», «Ատլանտիա», «Ինդեոր»: Իրականացվել է ավելի քան 130 թռիչք: Ծրագիրն ավարտվել է 2014-ին:



«Սփեյս Շաթլ» տիեզերանավը. 1. պինդ վառելիքային արագացուցիչ, 2. ուղեծրային աստիճան, 3. կախովի վառելիքի բաք

ՍՓԵՆԴԵՐ (Spender) Սթիվեն (1909–1995), անգլիացի բանաստեղծ, քննադատ: Հեղինակ է «20 բանաստեղծություն» (1930), «Բանաստեղծություններ» (1933), «Ավերակներ և տեսիլքներ» (1942), «Կեցության սահմանը» (1949) ժող-ների, «Դատավորի փորձությունները» (1938) չափածո պիես, «Պոեզիան 1939 թ-ից հետո» (1948), «Շելլի» (1952) գրաքննադատ. աշխ-ների, նաև պատմվածքների, վեպերի, ուղեգր. ակնարկների:

ՍՓԵՆՍ (Spence) Մայքլ (ծ. 1943), ամերիկացի տնտեսագետ: Աշխ-ները վերաբերում են տեղեկատվության էկոնոմիկայի, մրցակցության դինամիկ ասպեկտների անհամաչափ տեղեկատվությամբ շուկաների հետազոտությանը: Նորելյան մրց. (2001, Ջ. *Ակերլոֆի* և Ջ. *Սթիգլիցի* հետ):

ՍՓԵՆՍԵՐ (Spencer) Էդմունդ (մոտ 1552–1599), անգլիացի բանաստեղծ: Հեղինակ է «Հովվի օրացույցը» (1579) ժող. բանաստեղծության ոճով գրված հովվերգության, «Հավերժահարսների թագուհին» (1590–96) անավարտ այլաբան. պոեմի, «Իռլանդիայի արդի վիճակի մասին» (1633) աշխ-յան: Անգլ. տաղաչափություն է մտցրել «սփենսերյան տունը»:

ՍՓԵՆՍԵՐ Հերբերտ (1820–1903), անգլիացի փիլ., սոցիոլոգ, պոզիտիվիզմի հիմնադիրներից: Սոցիոլոգիայում օրգ. դպրոցի հիմնադիրը, ազատականության գաղափարախոս: Զարգացրել է համընդհ. էվոլյուցիայի մասին մեխանիստ. ուսմունք: Զգալի ավանդ է ունեցել նախնադար. մշակույթի ուսումնասիրության գործում: Հեղինակ է «Համադրական փիլիսոփայության համակարգը» (1862–96) աշխ-յան:

ՍՓԵՆՍԵՐ, Հաղ. օվկ-ի ծովածոց՝ Ավստրալիայի հվ. ափերին՝ Էյր և Յորգ թ-կղզիների միջև: Երկ.՝ 330 *կմ*, լայն. մուտքի մոտ՝ 80 *կմ*, խոր.՝ մինչև 64 *մ*: Խոշոր նվինգստ-ը՝ Պորտ Պիրի:

ՍՓԵՐԻ (Sperry) Ռոջեր Ուոլկոթ (1913–1994), ամերիկացի հոգեբան, նյարդաֆիզիոլոգ: ՌԳԱ արտ. անդամ (1988): Հետազոտությունները վերաբերում են տեսողության նյարդաֆիզիոլոգիային, մարդու գլխուղեղի կիսագնդերի ֆունկցիոնալ մասնագիտացմանը: Նորելյան մրց. (1981):

«ՍՓԵՔԹԵՅԹՈՐ» (“The Spectator” – «Դիտորդ»), անգլ. երգիծ., բարոյախոս. հանդես (1711–14, Լոնդոն): Խմբ-հրտ-ներ՝ Ջ. Ադիսոն, Ռ. Սթիլ: Եվրոպ. հնագույն պարբ-ներից (փակվելուց հետո լույս տեսած 555 համարները հրատարակվել են 7 գրքով):

ՍՓԻԴՈՒԵՅ (անգլ.՝ speedway – արագընթաց ճանապարհ), մոտոցիկլ. սպորտի տեսակ՝ մոտոարշավներ բոլորուղիներում (արահետներ ևն), ինչպես նաև մարզադաշտերի սառցապատ արշավուղիներում: Առաջացել է Մեծ Բրիտանիայում 1920-ական թթ-ին: Աշխարհի առաջնություններն անցկացվում են 1934-ից, Եվրոպայինը՝ 1959-ից:

ՍՓԻԼԲԵՐԳ (Spielberg) Սթիվեն (ծ. 1947), ամերիկացի կինոռեժ., սցենարիստ, պրոդյուսեր: Նկարահանել է «Մենամարտ» (1971), «Այլմոլորակայինը» (1982), «Ինդիանա Ջոնսը և Շակատագրի տաճարը» (1984), «Ինդիանա Ջոնսը և խաչակրաց վերջին արշավանքը» (1989), «Յուրայի դարաշրջանի այգին» (1993), «Փրկել շարքային Ռայանին» (1998), «Տերմինալ» (2004), «Մյունխեն» (2005), «Լինքոլն» (2012) և այլ ֆիլմեր: Մեծ ինչ-որ ներդրություն է ունեցել Ս-ի «Շինդլերի ցուցակը» (1993) ֆիլմը՝ նվիրված հրեաների հոլոքոստին (1939–45): «Օսկար» (1994՝ կրկնակի, 1999):

«ՍՓԻԻՈՒ-Ք», գր-գեղ., հաս. պարբերաթերթ (1958-ից, Բեյրութ): Հայկ. ժողովրդային շարժման հրտ-յուն: Խմբ-ներ՝ Սիմոն Սիմոնյան (հիմնադիր), Գևորգ Ամեմյան, Գևորգ Յազըճյան, Հովսեփ Արթինյան, 2009-ից՝ խմբագրակազմ:

«ՍՓԻԻՈՒ-Ք», գիտաուս. կենտրոն ՀՊՄՀ-ի կազմում: Ստեղծվել է 1995-ին Երևանում: Հիմնադիր-տնօրեն՝ Սուրեն *Դանիելյան*: Կազմակերպում է սփյուռքահայ կրթօջախների հայոց լեզվի և գրկ-յան ուսուցիչների վերապատրաստման ամենամյա, իսկ 2002-ից՝ ՀՀ և ԼՂՀ դպրոցների հայոց լեզվի մասնագետների համար՝ արևմտահայ-ի և սփյուռքահայ գրկ-յան դասընթացներ: «Ս.» դասընթացներ է կազմակերպել նաև Արգենտինայում (1996), ՌԴ-ում (2000), Իրանում (2001):

ՍՓԻՒՔ (Speke) Ջոն Հենինգ (1827–1864), Աֆրիկայի անգլիացի հետազոտող: 1854–1855-ին և 1856–59-ին Ռ. Ֆ. Բյորտոնի հետ հետազոտել է Սոմալին և հայտնագործել Տանգանիկա, 1858-ին՝ Վիկտորիա լճերը և հաստատել (1860–63-ին, Ջ. Օ. Հրանտի հետ), որ Վիկտորիա և Նեղոս գետերը սկիզբ են առնում Վիկտորիա լճից:

ՍՓՅՈՒՌՔ, **դիասպորա** (հուն.՝ սփռում, տարածում բառից), ժողղ-ի (էթնիկ. ընդհանրության) այն մասը, որ բնակվում է հայրենիքից կամ բնօրրանից դուրս և պահպանում է իր ազգ. դիմագիծը: «Ս.» հասկացությունը ձևավորվել և սկզբն. շրջանում կիրառվել է մ. թ. ա. VII–VI դդ-ից Պաղեստինից արտաքսված հրեաների նկատմամբ: Ս. կազմող համայնքները, անկախ իրենց քանակ. և որակ. հատկանիշներից, ներհյուսված են ընդունող երկրի հաս-յանը, մշակույթին, դրանով էլ նրանց զարգացումը ենթարկվում է տվյալ երկրի ներքին օրինաչափություններին: Ս-ի՝ որպես ազգ-մշակութ. ամբողջական-ության, ինքնապահովման և ինքնազարգացման գործում կարևորագույն տեղ է գրավում հայրենիքի հետ կապը: Տես նաև *Սփյուռքահայություն*:

«ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ», տարեգիրք (2012-ից, Երևան): ՀՀ ՄՆ և ԵՊՀ հայագիտ. հետազոտությունների ինստ-ի հրտ-յուն: Գլխ. խմբ.՝ Յուրի Ավետիսյան:

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐ, սկզբն. շրջանում եղել են եկեղեցիներին կից ծխական դպրոցներ, հետագայում բարեսիր., մշակութ., հայրենակց. կազմ-յունների ու անհատ բարերարների ջանքերով ու միջոցներով բացվել են աշխարհիկ կրթ. հաստատություններ: Հասկացությունն առաջացել է *Հայոց ցեղասպանությունից* հետո, երբ արևմտահայության փրկված բեկորները տարբեր երկրներում ստեղծել են նոր գաղթավայրեր կամ համալրել են գոյություն ունեցողները: Առաջին Ս. դ. հիմնադրվել են Լիբանանում, Սիրիայում, Կիպրոսում, Պաղեստինում, Իրանում, Իրաքում, Եգիպտոսում, Հունաստանում, Բուլղարիայում, Ֆրանսիայում, ապա՝ նաև ԱՄՆ-ում, Կանադայում, Ավստրալիայում, Բրազիլիայում, Արգենտինայում, Ուրուգվայում և այլուր: Դրանք սկզբում եղել են որբանոց-կրթարաններ, գաղթավայրերի կայունացմանը զուգընթաց դարձել են դպրոցներ:

1990-ական թթ-ից հետո ՌԴ-ի, ինչպես նաև Միջին Ասիայի, Ուկրաինայի և նախկին խորհրդ. այլ հանրապետություննների հայկ. համայնքների ստվարացմանը զուգահեռ՝ բազմաթիվ քաղաքներում և բնակավայրերում բացվել են մեկօրյա, քիչ թվով՝ ամենօրյա դպրոցներ, որոշ պետ. դպրոցներում՝ հայկ. դասարաններ, հայագիտ. դասընթացներ ևն:

Ներկայում Սփյուռքում գործում են 4 տիպի՝ տարր., թերի միջնակարգ (նախակրթական), միջնակարգ (երկրորդական) և բարձրագույն (լիցեյ, քոլեջ), շուրջ 400 կրթ. հաստատություններ, ինչպես նաև շուրջ 500 մեկօրյա (կիրակնօրյա կամ շաբաթօրյա) դպրոցներ:

Ս. դ–ի համար ՀՀ–ից առաքվում են դասագրքեր, տեսաժապավեններ, գիտ. հրտ–յուններ, հայտնի գիտ. կենտրոն–ներում դասընթացներ կարդալու են հրավիրվում ՀՀ բուհերի մասնագետներ, սփյուռքահայ գիտնականները ներգրավ–վում են ՀՀ–ում կրթության համակարգի զարգացման ծրագրերում:

2000–ից Երևանում կազմակերպվում են սփյուռքահայ ուսուցիչների ամենամյա դա–սընթացներ և սեմինարներ: Արտերկրում հայապահպանության խնդիրների լուծ–մանը, ազգ. ավանդույթների պահպան–մանը, Ս. դ–ի գործունեությանը մեծապես նպաստում են ՀՀ ՄՆ և ԿԳՆ–ի սփյուռքի բաժինը (1964–93–ին այդ գործառույթն իրականացրել է ***Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն***): 2004–ից ՀՀ ԿԳՆ–ն 2–ամյա պարբերականութ–յամբ կազմակերպում է համահայկ. կրթ. խորհրդաժողովներ՝ ՀՀ, ԼՂՀ և Սփյուռքի կրթության պատասխանատուների մաս–նակցությամբ: ՀՀ ՄՆ նախաձեռնությամբ 2010–ից անցկացվում է «Սփյուռքի լավա–գույն կրթօջախ» մրցույթը: Ս. դ–ի բազ–մաթիվ շրջանավարտներ բարձրագույն կրթություն են ստանում ՀՀ բուհերում:

ՍՓՅՈՒՌ-ՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱ–ԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵ, ՀԿ, 1964–93–ին Երևանում: Գլխ. խնդիրը ար–տերկրում հայապահպանության խնդիր–ների լուծմանը և ազգ. ավանդույթների պահպանմանը նպաստելն էր: Համագոր–ծակցել է շուրջ 70 երկրների ավելի քան 1000 հայկ. միությունների և մոտ 10 հզ. անհատ գործիչների հետ: Սփյուռքահայ կրթ. կենտրոններ է առաքել դասագրքեր, քարտեզներ, գեղ. և մանկ. գրկ., հան–րագիտարաններ: Ամեն տարի (մինչև 1990–ը) կազմակերպել է ավելի քան 200 սփյուռքահայ երեխաների ամառ. հան–գիստը Հայաստանի ճամբարներում, 50 ուսուցչի համար մեկամսյա որակավոր–ման դասընթացներ Երևանում, գիտ–յան, մշակույթի գործիչների, ստեղծագործ. խմբերի փոխայցելություններ, զբաղվել սփյուռքահայ դիմորդների՝ ՀԽՍՀ բուհեր ընդունվելու, նրանց հանգստի, կենցաղի հարցերով ևն: Հրատարակել է «Սովետա–կան Հայաստան» (1990–ից՝ «***Վերածնված Հայաստան***») պատկերազարդ ամսագիրը և «***Հայրենիքի ձայն***», «***Հայություն***» շաբա–թաթերթերը: Կոմիտեի գործառույթների մեծ մասն իրականացնում է ՀՀ ՄՆ:

ՍՓՅՈՒՌ-ՔԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, հայ ժողդ–ի այն հատվածը, որը բնակվում է հայրե–նիքից կամ բնօրրանից դուրս: Հայերի արտագաղթը հայրենիքից պայմանավոր–ված է եղել 3 հիմն. գործոններով՝ տնտ., կրոն. և քաղ., որոնք, հատկապես ինքնու–րույն պետականության բացակայության պայմաններում, մշտապես ուղեկցվել են օտար իշխանությունների բռնաճնշում–ներով ու հալածանքներով:

Հայերի 1–ին բռնի զանգված. տեղահա–նությունը եղել է IV դ–ում, երբ պարսից շահ Շապուհ II–ը բազմահազար հայերի գերեվարել է ***Իրան***: IV–XIII դդ–ում Բյու–զանդիայի կայսրերը հայերին պարբե–րաբար բռնագաղթեցրել են Թրակիա, Մակեդոնիա և Բալկանյան թ–կղզու այլ շրջաններ: Արտահոսքը Հայաստանից ուժեղացել է արաբ. տիրապետության շրջանում (VII–IX դդ.). հայերը հասել են մինչև Եթովպիա, Եգիպտոսի Արաբ. Հանրապետություն և այլուր: Զանգված. արտագաղթը վերստին սկսվել է XI դ–ում՝ սելջուկ. արշավանքների պատճառով. հայերը հասել են Կիևյան Ռուսիա, Ղրիմ, Մերձվոլգյան շրջաններ, Միջագետք, Կապադովկիա և այլուր: Կիլիկիայի Հայկ. թագավորության անկումից (1375) հետո մեծ թվով հայեր հարկադրված արտագաղթել են Կիպրոս, Իտալիա, Ֆրանսիա և այլուր: XI–XV դդ–ում մեծ ու փոքր համայնքներ են հիմնադրվել Բուլղարիայում, Ռումինիայում, Հունգա–րիայում, Մոլդովայում և այլուր: Մերձ. Արևելքում Օսմ. կայսրության ստեղծումն աղետալի էր հայ ժողդ–ի համար ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ հայկ. գաղթավայրերում: 1453–ին Կ. Պոլսի գրավման ժամանակ մեծ կորուստներ է ունեցել տեղի հայկ. համայնքը: 1475–ից, Ղրիմը Թուրքիայի գերիշխանության տակ ընկնելուց հետո, շատ ղրիմահայեր լքել են իրենց բնակավայրերը և գաղթել Լեհաստան, Ուկրաինա և այլուր: XVI–XVII դդ–ում ամենաողբերգականը շահ Աբ–բաս I–ի կազմակերպած բռնագաղթն էր 1604–05–ին, որի հետևանքով Իրանում առաջացել են նոր գաղութներ (տես ***Նոր Ջուղա***), ստվարացել հների: Արտագաղթ եղել է նաև Իրանից՝ ***Իրաք, Հնդկաստան***, նաև ***Ռուսաստան*** ու Եվրոպա: XVII–XVIII դդ–ում հայեր ապրում էին նաև Հս. Աֆ–րիկայում, Մերձ., Միջին և Հեռավոր Արևելքում, Կենտր. և Հվ. Ասիայում: XIX դ–ի 2–րդ կեսին Օսմ. կայսրության վա–րած հայահալած քաղ–յունը, 1894–96–ին կազմակերպած ջարդերը հարկադրել են բազում հայերի արտագաղթել, նրանց զգալի մասը հանգրվանել է Ամերիկա աշխարհամասում: ԱՀՊ–ի նախօրեին արտերկրում ապրող հայության ազգ. գործունեությունը կազմակերպվել ու կարգավորվել է համայնք. հաստատութ–յունների համակարգով՝ եկեղեցիներ, բարեգործ., կրթամշակութ., հայրենակց., քաղ. և զանազան այլ կազմ–յուններ:

Հայ գաղթաշխարհի պատմության մեջ որակապես նոր փուլ է սկսվել ԱՀՊ–ի տարիներին. Օսմ. կայսրության իշխա–նությունները, ձգտելով վերջնականապես ճնշել հայ ժողդ–ի ազգ–ազատագր. պայ–քարը և վերջ տալ Հայկ. հարցի լուծմանն ուղղված միջազգ. դիվանագիտ–յան ջան–քերին, Արմ. Հայաստանում, Կիլիկիայում և երկրի այլ վայրերում 1915–23–ին իրա–կանացրել են հայերի տեղահանություն, բռնագաղթ և կոտորածներ: ***Հայոց ցե–ղասպանության*** հետևանքով սպանվել է շուրջ 1,5 մլն հայ:

1915–23–ի ցեղասպանությունից հետո հայ ժողդ–ի պատմության մեջ առաջին անգամ հայ բնակչությունը գրեթե ամ–բողջովին վերացավ Արմ. Հայաստա–նի տարածքների հիմն. հատվածում, փրկվածների զգալի մասն սկսեց ապրել իր հայրենիքի պահպանված տարածքի՝ Արլ. Հայաստանի սահմաններից դուրս:

1920–ական թթ–ի վերջից որակապես այդ նոր գաղթաշխարհը հայերն անվանել են «Սփյուռք», որը համապատասխանում է հուն. «դիասպորային»:

Ներկայում սփյուռքահայ համայնքներ կան աշխարհի շուրջ 100 երկրում, սա–կայն Ս–յան հիմն. զանգվածը բնակվում է ՌԴ–ում, ԱՄՆ–ում, Ֆրանսիայում, Մերձ. Արևելքում:

Սփյուռքի համայնքները պայմանակա–նորեն խմբավորել են ըստ նրանց բնա–կության ընդհ. բնութագրերի՝ Արևելքի, Արևմուտքի, Ամերիկայի, Ավստրալիայի և հետխորհրդ. տարածքի հայկ. հա–մայնքներ, որոնք պահպանել են իրենց ազգ. ինքնությունը, կրոնը, նպաստել ազգ. մշակույթի զարգացմանը, ապա–հովել են կապը Հայաստանի հետ: Ազգ. կյանքը կազմակերպելու նպատակով հիմնադրել են եկեղեցի, ազգ. դպրոց (տես ***Սփյուռքահայ դպրոցներ***), հայրե–նակց., հաս–քաղ., մշակութ. միություններ, հրատարակել հայ. պարբ. մամուլ: Ներ–կայում Ս–յան թիվը շուրջ 6 մլն է:

Սփյուռքահայ կյանքում զգալի ազդե–ցություն ունի ՀԱԵ–ն՝ Հայաստանյայց առաքելական եկեղեցին, ՄՏԿԿ–ն, Երու–սաղեմի հայոց, Թուրքիո հայոց պատ–րիարքությունները: Տարբեր երկրներում գործող հայոց թեմերի հիմն. մասը են–թարկվում է Մայր աթոռ Սբ Էջմիածնին: Սփյուռքում գործում են 274 հայկ. եկեղե–ցիներ: Կան նաև կաթոլիկ և ավետարան. հայ համայնքներ:

Սփյուռքահայ կյանքում զգալի դեր են կատարում համասփյուռքյան քաղ. և հաս. կազմ–յունները՝ ՀՅԴ–ն, ՌԱԿ–ը, ՍԴՀԿ–ն, Համազգ. մշակութ. միությունը, ԹՄՄ–ն, ՀՄԸՄ–ն, ՀՄՄ–ն, ՀԵԸ–ն, «Նոր սերունդ» մշակութ. միությունը ևն: Կենս. նշանակություն ունեն բարեգործ. կազմ–յուններն ու հիմնադրամները՝ ՀԲԸՄ–ն, ՀՕՄ–ը, ՀՕՖ–ը, Հովարդ Կարագյոզյան հաստատությունը, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը ևն: Սփյուռքահայերն ակտիվ մասնակցում են համահայկ. բո–լոր նախաձեռնություններին, առանձին ներկայացուցիչներ մասնակցում են ***«Հա–յաստան» համահայկական հիմնադրամի*** աշխ–ներին, բազմաթիվ հայեր անձնական նախաձեռնությամբ ՀՀ–ում, ԼՂՀ–ում և Ջավախքում մասնակցում են բարեգործ. ու տարատեսակ ներդրում. ծրագրերի: Գործում են նաև բազմաթիվ այլ բարե–սիր., մշակութ., կրթ., երիտասարդ–մարզ., կանանց, մասնագիտ. միություններ:

Սփյուռքի գրեթե բոլոր կազմ–յունն–ների գործունեության կարևոր նպատակը Հայկ. հարցի դրական լուծման և Հայոց ցեղասպանության համար հատուցման հասնելն է:

Հայ ժողդ–ի 2 հատվածները համա–խմբելու, նրանց միջև հարաբերություն–ներն առավել արդյունավետ և փոխշա–հավետ դարձնելու նպատակով 1999–ից ՀՀ–ում հրավիրվում են «Հայաստան–Սփյուռք» համահայկ. խորհրդաժողով–ներ, անցկացվում են Համահայկ. մարզ. խաղեր, 2007–ին ՀՀ խորհրդարանն ընդունել է «ՀՀ երկքաղաքացիության մասին» օրենք ևն: 2008–ին ստեղծվել է ՀՀ ՄՆ, որը կոչված է Ս–յան հետ տարվող աշխ–ը համակարգելուն:

«ՍՔԱՅԼԸԲ» (անգլ.՝ Sky labratory – երկնա–յին լաբորատորիա), երկրամերձ ուղեծրով թռիչքի ամերիկ. ուղեծր. կայան և նրա մշակման ծրագիրը: Ուղեծիր է դուրս բերվել 1973–ին, հանդերձված էր տիեզ. տարածության հետազոտման, բժշկա–կենսբ. և տիեզ. ուսումնասիրությունների, կիրառ. խնդիրների լուծման անհրաժեշտ սարքավորումներով: Առլգն զանգվածը՝ 77 *կտ*, բնակելի հատվածամասի ծավա–լը՝ 340 *մ*³: Կայանը նախատեսված չէր Երկիր վերադարձնել. անձնակազմի տեղ հասցնելը և հերթափոխությունը կատարվել է «Ապոլոն» տիեզերանավով:

1973–74–ին կայանում աշխատել է 3 անձ–նակազմ (3–ական անդամով): Թռիչքի տևողությունը՝ 84 օր: 1979–ին դադարեց–վել է գոյությունը:

ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ՎԱՆՔ, Երաշխավոր վանք, Պատերազմի Սուրբ Նշան վանք, VII–VIII դդ–ի ճարտ. համա–լիր Բզնունիք գավո–ում՝ Արծկե ք–ից հս՝ Սիփան լ–ան լանջին: 1442–ին հիմնովին վերակառուցվել է վանքի եկեղեցին, որի գմբեթավոր հորինվածքը մույթերի փո–խարեն հենվել է գլանաձև զույգ սյուների վրա: Արմ–ից կից էր թաղակապ գավիթը: Ավերվել է 1895–ին, լքվել 1915–ին:

ՍՔԵԼԵՏՈՆ (անգլ.՝ skeleton – կմախք, կարկաս), արագընթաց վայրէջք լ–լանջից անցկ հատուկ սահնակներով, որոնք նույնպես կոչվում են Ս. (կառուցվել են 1880–ական թթ–ին Շվեյցարիայում): Մարզիկը, երեսնիվայր պառկած սահնակի վրա, Ս. ղեկավարում է կոշիկների քթա–մասերի բութակներով: Օլիմպ. խաղերի ծրագրում է 2002–ից (եղել է նաև 1928 և 1948–ին), աշխարհի առաջնությունները՝ 1982–ից:

ՍՔՈՈՒԼՍ, Շոուլս (Scholes), Մայրոն (ծ. 1941), կանադա–ամերիկացի տնտեսա–գետ: Աշխ–ները վերաբերում են կորպո–րատիվ ֆինանսներին: Ֆ. Բլեքի և Ռ. *Մերթոնի* հետ ստացել է տնտ–յան տար–բեր բնագավառներում բորսային թղթերի արժեքի հաշվարկման բանաձև, իսկ մշա–կած եղանակը հնարավորություն է տվել ստեղծելու նոր տիպի ֆին. գործիքներ: Նորելյան մրց. (1997, Ռ. Մերթոնի հետ):

ՍՔՈՒԱՐՅԻՆԱ (Squarzina) Լուիջի (1922–2010), իտալացի ռեժ., դրամատուրգ: 1952–ին (Վ. Գասմանի հետ) կազմակերպել և ղեկավարել է Իտալ. արվ–ի թատրոնը (Հռոմ), 1962–76–ին՝ «Տեատրո ստաբիլե» (Ջենովա), 1977–84–ին՝ «Տեատրո ստաբի–լե» (Հռոմ) թատրոնների ղեկ.: Հեղինակ է պիեսների («Լուսնի երեք քառորդը», 1953, «Ռոմանիոլա», 1957, «Սեպտեմբերի 8», 1972, ևն):

«ՍՕՍ–ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ», կրթա–դաստիարակչ. բարեգործ. հաստատութ–յուններ ծնողազուրկ երեխաների համար, որտեղ պայմաններն առավելագույնս մո–տեցված են ընտանիքի մոդելին: Առաջին նմանատիպ հաստատությունը 1949–ին բացել է ավստրիացի մանկավարժ Գ. Գմայները (1919–1986) Ավստրիայի Իմստ ք–ում: Ներկայում 136 երկրներում գոր–ծում են ավելի քան 500 «Ս–Մ. գ.», որոնց գործունեությունը համակարգում է «ՍՕՍ Քինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմ–յունը (հիմն.՝ 1960): ՀՀ–ում 1989–ից գոր–ծում է «ՍՕՍ–Մանկական գյուղեր» հայկ. բարեգործ. հիմնադրամը, 1–ին հաստա–տությունը բացվել է 1990–ին Կոտայքում:

ՍՖԻԳՄՈԳՐԱՖԻԱ (< հուն. sphygmos – անոթազարկ և ...*գրաֆիա*), **անոթազար–կագրություն**, զարկերակների պատերի տատանումների՝ այսինքն՝ անոթազար–կի գրանցումը հատուկ սարքի (սֆիգ–մոգրաֆ) օգնությամբ: Սֆիգմոգրաֆով որոշում են զարկերակներում արյան ճնշման և սրտի կծկումների ռիթմի փո–փոխությունների առկայությունը:

ՍՖԻՆՔՍ, 1. թևավոր կիսակին–կիսաոյուծ հուն. դից–յան մեջ, որը բնակվել է Թեբեի մերձակայքում՝ լեռան վրա: Ս. անցորդնե–րին անլուծելի հանելուկ է առաջադրել, որի պատասխանը չստանալով՝ խժռել է նրանց: Ս–ի հանելուկը («…ով է առա–վոտյան քայլում 4 ոտքով, կեսօրին՝ 2, երեկոյան՝ 3») գուշակել է ***Էդիպոսը***, որից հետո Ս. ցած է նետվել ժայռից: 2. Մարդու գլխով և առյուծի մարմնով ֆանտաստիկ. էակի արձան Եգիպտոսում՝ Գիզայում՝ բուրգերի հարևանությամբ:

ՍՖԻՆՔՄՆԵՐ, **իլիկաթիթեռներ** (Sphingodae), թիթեռների ընտանիք: Հայտնի է ավելի քան 1200 տեսակ, ՀՀ–ում՝ 20: Խոշոր և միջին մեծության (թևե–րի բացվածքը՝ 2–20 *սմ*), արագաշարժ, վառ գույներով թիթեռներ են: Առավել տարածված են պատատուկի, ակնավոր, Կոմարովի, քոսքսուկի կրետանման, գծավոր, գինու փոքր, իշակաթնուկի հվ. տեսակները: Գանգաթիթեռը և դափ–նեվարդի Ս. գրանցված են ՀՀ Կարմիր գրքում: Հազվադեպ են սոճու, բարդու Ս.: Կաղնու, լորենու, գծավոր և մասամբ չիչխանի Ս. կարող են վնասել խաղողի վազերը, փշատենին ևն:

ՍՖՐԱՆՑԵՍ (Ֆրանցես) Գեորգիոս (1401–1477/78), բյուզանդացի պատմիչ, դիվա–նագետ: Հեղինակ է «Փոքր ժամանակա–գրություն» պատմ. երկի, որն ընդգրկում է իր ժամանակի իրադարձությունները: XVI դ–ից Ս–ին է վերագրվել ևս մեկ երկ՝ «Մեծ ժամանակագրությունը» (բովանդակում է Բյուզանդիայի 1258–1481–ի իրադարձութ–յունները), որն իրականում 1570–ականնե–րի բանաքաղություն է: 1760–ականներին Մելքիսեդեկ Թարգմանը (Բանասեր) և Հարությունը «Մեծ ժամանակագրութ–յունը» Կ. Պոլսում թարգմանել են հայ. (Մնոդ., ձեռ. № 2644, 9886):

Վ

Վ, հայ. այբուբենի 30-րդ տառը, անվանումը՝ վեվ: Ունի ***գրչագիր***, ***երկաթագիր***, ***բոլորգիր***, ***շղագիր***, ***նոտրգիր*** տառատեսակները: Հայ-ի շրթնատամնային շփական ձայնեղ պարզ բաղաձայն հնչյուն (հնչույթ) է: Թվային արժեքը՝ 3000:

ՎԱԱԼ (Vaal), գետ ՀԱՀ-ում: Երկ.՝ շուրջ 1250 *կմ*, ավազանը՝ 196 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը ստորին հոսանքում՝ 114 *մ³/վ*: Ջրերն օգտագործվում են ջրամատակարարման և ոռոգման համար: Ափին է Ֆերինիխինգ ք.:

ՎԱԱՐԱՆԴԻ (Vaarandi) Դերորա (1916–2007), էստոնացի բանաստեղծ: Էստ. ԽՍՀ ժող. գրող (1971): Հեղինակ է «Ալեբախության աղմուկի ներքո» (1948), «Երազողը պատուհանի մոտ» (1959), «Առավոտյան դաշտավայրերի հացը» (1965), «Քամու լույսով» (1977) քնար. բանաստեղծությունների ժող-ների:

ՎԱԳԱ, գետ ՌԴ եվրոպ. մասի հս-ում: Երկ.՝ 575 *կմ*, ավազանը՝ 44,8 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 400 *մ³/վ*: Լուղարկելի է, նավարկելի՝ գետաբերանից 355 *կմ*:

ՎԱԳԱՆՈՎԱ, Ագրիպինա Յակովլևնա (1879–1951), բալետի ռուս. արտիստուհի, բալետմայստեր, մանկավարժ: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1934): 1897–1916-ին՝ Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնի մենապարուհի (Օդետա-Օդիլիա՝ Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճը», Մլադա՝ Լ. Մինկուսի «Մլադա», ևն), 1931–37-ին՝ Լենինգրադի ՕՔԹ-ի բալետի խմբի գեղ. ղեկ.: Վ.-ի մանկավարժ. համակարգը («Դասական պարի հիմունքները», 1934) կիրառվում է բազմաթիվ երկրներում: Սաներից են նաև Մ. Տեր-Ստեփանյանը, Ն. Աղեկյանը, Ե. Թանղիևա-Բիրզնիեկը և ուր.: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946):

ՎԱԳԵՐԱՋԻԵՐ (Hippotigris), **զեբրեր**, ձիեր սեռի միասմբակավոր կենդանիների տեսակների խումբ: Մարմնի երկ.՝ մինչև 2,4 *մ*, գունավորումը՝ իրար հաջորդող մուգ և բաց գույների զոլերով: Հայտնի է 4 տեսակ՝ Աֆրիկայի սավաննաներում: 2 տեսակ գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում: Կլիմայավարժեցվել է Ուկրաինայում (Ասկանիա Նովա):

ՎԱԳԻՆԻԶՄ (լատ.՝ vagina – հեշտոց), հեշտոցի և կոնքի հատակի մկանների ջղաձիգ կծկումներ, որոնք խանգարում են սեռ. հարաբերությանը:

ՎԱԳԻՖ Մոլլա Փանահ (Փանահ Մեհթիաղա օղլի, մոտ 1717–1797), բանաստեղծ, պետ. գործիչ: Ստեղծել է սիրային, փիլքնարերգություն (գազելներ, մուխամմազներ): Արլ. պոեզիայում հաստատել է աշուղ. գոշմա (ղոշմա) ձևը: Եղել է Ղարաբաղի վեզիր, Ռուսաստանի հետ բանակցություններ է վարել՝ ռուսների աջակցությունն ստանալու նպատակով: Գլխատվել է:

ՎԱԳՆԵՐ (Wagner), գերմանացի երաժիշտներ, թատեր. գործիչներ: **Զիգֆրիդ Վ.** (1869–1930), կոմպոզիտոր, դիրիժոր, օպեր. ռեժ.: Ռ. Վ. ***Վագների*** որդին: Հեղինակ է օպերաների: Որդիները՝ **Վիլանդ Վ.** (1917–1966), օպեր. ռեժ.: 1951-ին (եղբոր հետ) վերականգնել է Բայրոյթի փառատոնը, նորովի բեմադրել Ռ. Վագների օպերաները («Տանհոյզեր», 1961, ևն): **Վոլֆգանգ Վ.** (1919–2010), ռեժ.: 1951–2008-ին՝ Բայրոյթի փառատոնի ղեկ. (մինչև 1966-ը՝ եղբոր հետ): Բեմադրություններից են՝ «Նիբելունգի մատանին» (1976), «Պարսիֆալ» (2004) ևն:

ՎԱԳՆԵՐ Եգոր Եգորովիչ (1849–1903), ռուս. քիմիկոս-օրգանիկ (ծագումով՝ գերմանացի): Աշակել է (1888) ոչ սահման. միացությունների կառուցվածքի որոշման եղանակ: Բացահայտել է (1899) կամֆենային վերախմբավորումը (Վագների վերախմբավորում):

ՎԱԳՆԵՐ Վիլհելմ Ռիխարդ (1813–1883), գերմանացի կոմպոզիտոր, դիրիժոր: Մոնումենտալ երաժշտ. դրամայի և արդի դիրիժոր. արվ-ի հիմնադիրներից, օպեր. արվ-ի բարեփոխիչ, հարմոնիայի և գործիքավորման նորարար: Հեղինակ է «Ռիենցի» (1840), «Թռչող հոլանդացին», (1841), «Տանհոյզեր» (1845), «Լոենգրին» (1848), «Տրիստան և Իզոլդա» (1859), «Նյուրնբերգյան մայստերզինգերներ» (1867), օպերաների, «Պարսիֆալ» (1882) միստերիա-օպերայի, «Նիբելունգի մատանին» քառերգության (1854–74) և այլ սիմֆ. պատկերների, լիրբետոների, դրամաների, գրախոսությունների, «Արվեստը և հեղափոխությունը» (1849), «Ապագայի գեղարվեստական ստեղծագործությունը» (1848), «Օպերան և դրաման» (1851) և այլ աշխ-ների:

ՎԱԳՆԵՐ ՅԱՈՒՐԵԳ (Vagner Jauregg) Յուլիուս (1857–1940), ավստրիացի հոգեբույժ: Հիմնավորել և ներդրել է ջերմաբուժությունը (պիրոթերապիա)՝ հարաճուն լուծանքի (պրոգրեսիվ պարալիչ) բուժման նպատակով: Նոբելյան մրց. (1927):

ՎԱԳՐ (Panthera tigris), կատվազգիների ընտանիքի կաթնասուն կենդանի: Մարմնի երկ.՝ մինչև 3, պոչինը՝ 1,1 *մ*, կ. զ.՝ մինչև 390 *կգ*: Հայտնի է 7 ենթատեսակ՝ Առաջավոր և Հս-արլ. Ասիայում, Հինդոստանում, Ռուսաստանում, մինչև XX դ-ի 30-ական թթ. հանդիպել է նաև Անդրկովկասում: Պահպանվել է հիմնականում արգելավայրերում: Գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում: Հայտնի են մարդակերության (կանիբալիզմ), հիմնականում՝ ծեր, հիվանդ գազանների վրա հարձակման դեպքեր: Անազատ պայմաններում հեշտությամբ բազմանում է:

ՎԱԳՐԱԿԱՏՈՒ (Acinonyx jubatus), կատվազգիների ընտանիքի կաթնասուն կենդանի: Մարմնի երկ.՝ մինչև 150, պոչինը՝ 75 *սմ*: Ապրում է Ասիայի անապատներում (պահպանվել է Իրանում) և Աֆրիկայում, մինչև 1960-ական թթ.՝ Թուրքմենիայի հվ-ում (հավանաբար անհետացել է): Որսին հետապնդելով կարճ տարածություններում կարող է զարգացնել 120 *կմ/ժ* արագություն: Սակավաթիվ է, հեշտությամբ ընտելանում է, անազատ պայմաններում բազմանում: Գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

«ՎԱԳՐԻ ԱՉՔ», միներալ, քվարցի նրբաթել. պսևդոմորֆոզը՝ գյոթիտի խառնուրդով ասբեստանման ոիբեկիտի (հիմնականում՝ ամֆիբոլ) մեջ: Ունի գեղեցիկ ոսկեգույն-շագանակագույն երանգավորում: Արհեստագործ. քար է:

ՎԱԴՄԵԴԱՆԻ, Ուեդ Մեդանի, ք. Սուդանում, Գեզիրա վիլայայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 375,7 (2010): Տրանսպորտ. հանգույց է, ոռոգովի երկրագործ. շրջանի առևտր. կենտրոն:

ՎԱԴՈԴԱՐԱ, **Բարոդա**, ք. Հնդկաստանի արմ-ում՝ Գուջարաթ նահանգ-ում: Բն.՝ 1,54 մլն (2010): Տրանսպորտ. հանգույց է: Զարգացած է արհեստագործությունը: Մոտակայքում՝ Կոյալիում, կա խոշոր նավթավերամշակման գործարան:

ՎԱԴՈՒՅ (Vaduz), Լիխթենշթայն իշխանության մայրաքաղաքը՝ Հռենոսի ափին: Բն.՝ 5,1 հզ. (2010): Զարգացած է զինեգործությունը, զբոսաշրջությունը: Կա գոթ. կապելայով (XV դ.) միջնադար. ամրոց (XI դ.): Հայտնի է 1150-ից:

ՎԱԶԱ, **Վասա** (Vasa), շվեդ. թագավոր. հարստություն 1523–1654-ին: Հիմնադրել է *Գուստավ I*-ը: 1587–1668-ին՝ թագավորել է նաև Լեհաստանում:

ՎԱԶԱՐԻ (Vasari) Ջորջո (1511–1574), իտալացի գեղանկարիչ, ճարտ., արվ-ի պատմաբան: Աշխատել է հիմնականում Ֆլորենցիայում: Հեղինակ է Վեկկիո պալատի որմնանկարների (1555–71), Ուֆֆիցի ճարտ. համալիրի (1560-ից՝ թանգարան), նաև «Առավել նշանավոր գեղանկարիչների, քանդակագործների և ճարտարապետների կենսագրություններ» (1550) գրքի:

ՎԱԶԳԵՆ (Տերոյան Տիգրան, 1873–1898), ազգ-ազատագր. շարժման գործիչ: ՀՀԴ

կուս–յան անդամ՝ 1892–ից: Մասնակցել է 1896–ի Վանի ինքնապաշտպ–յանը: Դեմ է եղել Խանասորի արշավանքի կազմակերպմանը (1897–ի հուլիսի 25): Որպես ընդհանուր ապստամբության նախապատրաստման կողմնակից՝ կազմել է ապստամբության 1–ին կանոնագիրքը:

ՎԱԶԳԵՆ Ա Պալճյան (ավազանի անունը՝ Լևոն–Կարապետ, 1908–1994), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1955–ից: ՀՀ ԳԱԱ պատվ. անդամ (1991): Հայաստանի Ազգ. հերոս (1994): 1930–ական թթ–ից՝ ազգ–հաս., այնուհետև եկեղեց. եռանդուն գործունեություն է ծավալել ռումինահայ գաղութում: 1951–ին ձեռնադրվել է եպս.: Մասնակցել է կրոն. գործիչների՝ հանուն խաղաղության, զինաթափման և ժողդների միջև արդար հարաբերությունների հաստատման համաշխ. համաժողովներին (Մոսկվա, Բեռլին, Հելսինկի): 1989–ին վերահաստատել է Հայ եկեղեցու Արցախի թեմը, ձեռնարկել Արցախի մի շարք վանքերի վերաբացումն ու նորոգումը, վերաբացել է նաև Սյունիքի և Գուգարքի թեմերը: Մեծ է Վ. Ա–ի ավանդը «Հայաստան» համահայկ. հիմնադրամի ստեղծման գործում:

ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑ, հոգևոր ուս. հաստատություն: Հիմնադրվել է 1990–ին (Վազգենյան կոչվել է 1994–ից) Սևանի թ–կղզում՝ Արարատյան հայրապետ. թեմի առաջնորդ. փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանի (այժմ՝ *Գարեգին Բ*) նախաձեռնությամբ և Ամենայն հայոց կաթողիկոս *Վազգեն Ա*–ի օրհնությամբ: Գիշերօթիկ է՝ քառամյա ուս. ծրագրով: Ավարտելուց հետո ևս 2 տարի ուսանելով *Գևորգյան ճեմարանում*՝ սաներն անցնում են լիարժեք հոգևոր սպասավորության:

ՎԱԶԵԼԻՆ (ֆրանս.՝ vaseline), հատուկ քսուքանման զանգված, ծանր նավթայուղի և պինդ ածխաջրածինների (պարաֆին, ցերեզին ևն) խառնուրդ: Ստանում են նախ ածխաջրածինները յուղի մեջ հալելով, ապա՝ խառնուրդը ծծմբական թթվով մաքրելով և կավով սպիտակեցնելով: Բժշկության մեջ քսուքների հիմք է, տեխնիկայում օգտագործվում է թղթե կոնդենսատորների տոգորման համար և որպես քսանյութ:

ՎԱԶԻԱՆԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ, ճարտ. հուշարձան ՎՀ Սցխեթի շրջանի Վազիանի գ–ից հս–արլ.: Եկեղեցին (1691) ներքուստ՝ խաչաձև, արտաքուստ ուղղանկյուն գմբեթավոր կառույց է՝ հայկ. խորշերով: Արմ. ճակատին ագուցված են հայ. արձանագրություններով խաչքարեր: Պահպանվել է նաև գերեզմանոց՝ շիրմաքարերին հայ. և վրաց. տապանագրերով:

ՎԱԶՈՂ ԱԼԻՔԻ ԱՆՏԵՆԱ, ուղղորդված *անտենա*, որի երկրչփ. առանցքի երկայնքով տարածվում է էլեկտրամագնիս. տատանումների *վազող ալիքը*:

ՎԱԶՈՂ ԱԼԻՔՆԵՐ, ալիքներ, որոնք միջավայրում տարածվելիս տեղափոխում են էներգիա (ի տարբերություն *կանգուն ալիքների*), օր.՝ առաձգ. ալիքները ձողում, գազի սյան մեջ, հեղուկում, էլեկտրամագնիս. ալիքները երկար գծի երկայնքով, ալիքատարում:

ՎԱԶՈՊԵՆԻՆ, հակամիզամուղ հորմոն. մարդու և կենդանիների նյարդահորմոն: Սկսվում է ենթատեսաթմբում (հիպոթալամուս), մուտք է գործում հիպոֆիզ, որտեղից արտադրվում է արյան մեջ: Խթանում է երիկամ. խողովակիկներում ջրի հետներծծումը և նվազեցնում մեզի ծավալը: Առաջացնում է արյունատար համակարգի մազանոթների կծկումներ: Քիմ. բնույթով պեպտիդ է:

ՎԱԶՈՎ Իվան Մինչով (1850–1921), բուլղար գրող: Հեղինակ է «Մոռացվածների հերոսապատում» (1881–84) քնարաէպիկ. պոեմաշարի, բուլղ. գրկ–յան մեջ առաջին վեպ–հերոսապատումի՝ «Լծի տակ» (1889–90, հայ.՝ 1903), նաև վիպակների, պատմվածքների, հայրենասիր. բանաստեղծությունների ևն:

ՎԱԶՈՐԴՆԵՐ (Cursoriinae), քարադրանմանների կարգի թռչունների ընտանիք: Հայտնի է 10 տեսակ՝ Աֆրիկայի և Ասիայի հվ–արմ. անապատներում, Շրի Լանկա կղզում և Ավստրալիայում:

ՎԱԶՔ մարզական, աթլետիկայի հիմն. տեսակներից: Լինում է հարթ (վազքուղով, խճուղով), խոչընդոտ–արգելքներով (այդ թվում՝ սթիփլչեյզ), կրոսս, մարաթոնային:

«ՎԱԶՔ ԴԵՊԻ ԾՈՎ» (1914–ի սեպտ. 16–հոկտ. 15), անգլո–ֆրանս. և գերմ. բանակների 3 հանդիպակաց ռազմ. գործողությունների անվանումն Ա.Հ.Պ–ի ժամանակ Արմ. ճակատում: Հակառակորդները, փորձելով կողանցումով շրջանցել միմյանց, ճակատամարտելով, Ուազա գետի մոտից հասել են մինչև Հս. ծով:

ՎԱԹԵՈՒԼՈՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1815, տեղի է ունեցել Վաթեռլոո բնակավայրի մոտ (Բրյուսելից 20 *կմ* հվ) Նապոլեոն I–ի բանակի (72 հզ. մարդ, 243 թնդանոթ) և անգլո–հոլանդա–պրուս. զորքերի (70 հզ. մարդ, 158 թնդանոթ) միջև, «*Հարյուր օր*»–վա ժամանակաշրջանում: Ֆրանսիացիները պարտվել են և դիմել փախուստի՝ կորցնելով 32 հզ. մարդ և ողջ հրետանին, դաշնակիցները՝ 23 հզ. մարդ: Վ. ճ–ում կրած պարտության հետևանքով Նապոլեոնյան կայսրությունը վերջնականապես կործանվել է:

ՎԱԹԻՆՅԱՆ Ռուդոլֆ Մամիկոնի (ծ. 1941), կինոօպերատոր: Նկարահանել է «Հին օրերի երգը» (1982), «Մեր մանկության տանգոն» (1984), «Ուրախ ավտոբուս» (2000, երեքն էլ՝ Հայֆիլմ) գեղ., «Անլռելի գույներ» (1973, «Երևան» կինոստուդիա), «Փարաջանով. վերջին կոլաժ» (1995, «Հայկ» կինոստուդիա) վավերագր. և այլ ֆիլմեր: ՀՀ Պետ. մրց. (2002):

ՎԱԺԱ ՓՇԱՎԵԼԱ (Ռազիկաշվիլի Լուկա Պավլեի, 1861–1915), վրացի գրող: «Բախտրիոնի» (1892, հայ.՝ 1961) պոեմում պատկերել է վրաց ցեղերի պայքարը պարսկ. բռնապետության դեմ: Հեղինակ է նաև «Ալուդա Քեթելաուրի» (1888), «Հյուրն ու տանտերը» (1893), «Օձակերը» (1901) և այլ պոեմների, նաև պիեսների, բանաստեղծությունների, պատմվածքների, ազգագր., հրապարակախոս. հոդվածների:

ՎԱԼԱԴԻԵ (Valadier) Ջուզեպպե (1762–1839), իտալացի ճարտ., քաղաքաշինարար: Հռոմում կառուցել է Ստանիսլավ Պոնյատովսկու վիլլան (1800–17), Պիացցա դել Պոպոլո հրապարակի համալիրը, Մոնտե Պինչոյի պատշգամբը, վերականգնել անտիկ հուշարձաններ:

ՎԱԼԱԽ (Wallach) Օտտո (1847–1931), գերմանացի քիմիկոս–օրգանիկ: Բացահայտել է մի շարք տերպեններ: Հոտավետ նյութերի արտադր–յան նախաձեռնողներից: Նոբելյան մրց. (1910):

ՎԱԼԱԽԻԱ, պատմ. մարզ Ռումինիայում՝ Կարպատյան լ–ների և Դանուբ գետի միջև: Օլտ գետով բաժանված է Մունթենիայի (Մեծ Վ.) և Օլթենիայի (Փոքր Վ.): Մինչև 1829–ը եղել է Օսմ. կայսրության տիրապետության տակ, և միայն 1829–ին *Ադրիանուպոլսի հաշտության պայմանագրով* միացել է Ռուս. կայսրությանը (որոշակի ինքնավարութամբ): 1858–ից մտել է Դանուբյան իշխանությունների մեջ: 1859–61–ին միավորվել է Մոլդովայի հետ (1862–ից՝ Ռումի. իշխանություն):

ՎԱԼԱՆՍ (Valence), ք. Ֆրանսիայի հվ–արլ–ում՝ Ռոն գետի ափին, Դրոմ դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 65 հզ. (2010):

Հայերը Վ.–ում հաստատվել են 1923–25–ից. նրանց մեծ մասը գաղթել է Խարբերդից, Մալաթիայից, ավելի ուշ՝ Բուրսայից: Ներկայում ապրում է շուրջ 7 հզ. հայ: Ֆրանսիայի կազմակերպված համայնքներից է: Գործում են ՀԲԸՄ (1934–ից), Հայ Կարմիր խաչի, Մալաթիո կրթասիրաց ընկ–յան, Ֆրանսահայ մշակութ. միության, Ֆրանսահայ երիտասարդ. միության (ԺՄՖ) Վ.–ի մասնաճյուղերը, ինչպես նաև այլ հաս., հայրենասիր. կազմ–յուններ:

ՎԱԼԲԺԻԽ (Wałbrzych), ք. Լեհաստանի հվ–արմ–ում: Համանուն վոյեվոդության վարչ. կենտրոնը: Բն.՝ 121 հզ. (2010): Ճենապակու արտադր–յան կենտրոն է: Հայտնի է 1305–ից:

ՎԱԼԼԱՅԻ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ, *Վալդայ*, ՌԴ եվրոպ. մասի հս–արմ–ում: Ձրրաժան է Վոլգայի, Արմ. Դվինայի և այլ գետերի վերին հոսանքների համար: Բարձր.՝ մինչև 346 *մ*:

ՎԱԼԼԱՅԻ ՄԱՆՅԱՊԱՏՈՒՄ, Արևելաեվրոպ. հարթավայրի վաղպլեյստոցենյան սառցապատումը (70–11 հզ. տարի առաջ): Սառցադաշտի հվ. սահմանը հասել է մինչև Վալդայի բարձր–յուն:

ՎԱԼԴԵՆ (Walden) Պաուլ (Պավել Իվանովիչ, 1863–1957), ռուս. քիմիկոս (ծագումով՝ լատիշ): Ս. Պետերբուրգի ԳԱ (1910), ՌԳԱ (1917), ԽՍՀՄ ԳԱ (1925) ակադ.: 1919–ից՝ Գերմանիայում: Աշխ–ները վերաբերում են լուծույթների էլեկտրաքիմիային, օպտիկ. իզոմերիային (բացահայտել է վալդենյան դարձը), քիմիայի պատմությանը:

ՎԱԼԴԵՐԶԵ (Waldersee) Ալֆրեդ ֆոն (1832–1904), գերմանացի գեն–ֆլդմ. (1900): 1888–91–ին՝ ԳՇ պետ: Հանդես է եկել Ռուսաստանի և Ֆրանսիայի դեմ կանխարգելիչ պատերազմի օգտին: 1900–01–ին տերությունների համաձայնությամբ եղել է *Իմպերատորների ապստամբության* ճնշման համար ստեղծված միացյալ ԶՈՒ–ի գլխ. հրամ.:

ՎԱԼԴՀԱՅՄ (Waldheim) Կուրտ (1918–2007), ավստրիացի պետ. գործիչ: 1972–81–ին՝ ՄԱԿ–ի գլխ. քարտուղար: 1986–92–ին՝ Ավստրիայի դաշն. նախագահ: 1968–70–ին՝ Ավստրիայի ԱԳ նախարար:

ՎԱԼԴՀՈՌՆ (գերմ.՝ Waldhorn – անտառ. եղջերափող), փող. մունդշտուկավոր երաժշտ. գործիք: Ծագել է որսորդ. եղջերափողից XVII դ–ում: Երկար, նեղ, օղակաձև կորացած փողն ավարտվում է կոնաձև փողալայնուկով, մունդշտուկը խոր ու նեղ է, ձագարաձև:

ՎԱԼԴՈՐՖՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ, այլընտրանքային հանրակրթ. մասնավոր դպրոցներ, ստեղծվել են Ռուդոլֆ Շտայների (1861–1925) մանկավարժ. հայացքների հիման վրա: Հատուկ ուշադրություն է դարձվում երեխայի բարոյական, գե–

ղագիտ., սոցիալ. դաստիարակությանը, ստեղծագործ., աշխ. հմտությունների զարգացմանը: Գործում են 1919–ից, 1–ինը՝ Շտուտգարդում՝ «Վալդորֆ–Աստորիա» ֆաբրիկային կից (այստեղից էլ՝ անվանումը): Ուսման տևողությունը՝ 13 տարի, ուսուցումը՝ առանձնահատուկ մեթոդներով՝ առանց դասագրքերի, դասահարցման ու գնահատականի: Ներկայում աշխարհում գործում են շուրջ 900, ՀՀ–ում՝ 1 («Արեգնազան», 1994–ից) Վ. դ.:

ՎԱԼԵՆՇՏԱՅՆ, Վալդշտայն (Wallenstein, Valdštejn), Ալբրեխտ Վենցել Եվսեբիոս ֆոն (1583–1634), չեխ զորավար: 1625–ից՝ կայսեր. բանակի գլխ. հրամ.: 1626–27–ին պարտության է մատնել գերմանացի բողոքական իշխանների, Հոլանդիայի թագավոր Քրիստիան IV–ի զորքերին, որի համար ստացել է Մեկլենբուրգի դքսությունը: Սպանել են դավադիր սպաները:

ՎԱԼԵՆՍԻԱ, (Valencia), ԻՄ Իսպանիայի արլ.–ում՝ Միջերկր. ծովի ափին: Տարածքը՝ 10,765 հզ. *կմ*^{2}, բն.՝ 5,1 մլն (2011): Վարչ. կենտրոնը՝ *Վալենսիա*: Ներառում է Ալիկանտե, Վալենսիա, Կաստելյոն դե լա Պլանա պրովինցիաները:

ՎԱԼԵՆՍԻԱ, ք–նվինգստ Իսպանիայում, համանուն պրովինցիայի և ԻՄ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 810,1 հզ. (արվարձաններով՝ շուրջ 1,4 մլն, 2010): Երկթղ. հանգույց է: Գղտ. Ուերտա շրջանի կենտրոնն է: Գործում են թանգարաններ, թատրոններ, համալսարան: Հիմնադրվել է մ. թ. ա. II դ–ում: Պահպանվել են միջնադար. (XIII–XIV, XV և XVI դդ.) ճարտ. հուշարձաններ: «Մետաքսե սակարանը» (1483–86) ներառված է Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում: Հայտնի է համանուն ֆուտբոլի թիմը:

ՎԱԼԵՆՍԻԱ, ք. Վենեսուելայի հս–ում, Կարաբոբո նահանգ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,85 մլն (արվարձաններով, 2010): Հիմնադրվել է 1555–ին:

ՎԱԼԵՆՍԻԱՅԻ ԾՈՒՑ Միջերկրական ծովի, Իսպանիայի արլ. ափերի մոտ: Երկ.՝ 42,5 *կմ*, լայն.՝ 144,5 *կմ*, խոր.՝ 500 *մ*: Գլխ. նավնգստ–ր՝ *Վալենսիա:*

ՎԱԼԵՆՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, տես *Արժեքականություն*:

ՎԱԼԵՆՏԵՅ Դմիտրի Իգնատևիչ (1922–1994), ռուս. տնտեսագետ, ժողովրդագիր: ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1991): Ազգաբնակչության ուսումնասիրության ռուս. դպրոցի ղեկ.: 1965–ին հիմնադրել է ՄՊՀ տնտեսագիտ. ֆակ–ի ազգաբնակչության հիմնախնդիրների ուսումնասիրման կենտրոնը: «Ժողովրդագրության հանրագիտական բառարանի» գլխ. խմբ. (1985):

ՎԱԼԵՆՏԻՆԻ ԺԱՅՌԱՅԻՆ ՄՈՂԵՍ, Վալենտինի Դարևսկիա (Darevskia valentini), *իսկական մողեսների* ընտանիքի Դարևսկիա սեռի մողես: ՀՀ–ում հանդիպում է Շիրակի, Արագածոտնի, Կոտայքի, Գեղարքունիքի, Լոռու և այլ մարզերում՝ ժայռոտ և խիստ քարքարոտ վայրերում, նաև շինությունների պատերի ճեղքերում, բարձրլեռն. տարածքներում և այլուր: Բարեկազմ, տափակ մարմնով փոքր մողես է, երկ–յունը տարիքի հետ փոխվում է (2,6–7,7 *սմ*), պոչը մարմնից կրկնակի երկար է, ինքնահատվող: Մսվում է մանր հոդվածոտանիներով և փափկամարմիններով:

ՎԱԼԵՍ (Vallès) Ժյուլ (1832–1885), ֆրանսիացի գրող: 1871–80–ին՝ վտարանդի: Հեղինակ է ինքնակենսագր. «Ժակ Վենտրա» (հրտ.՝ 1879–86) եռերգության, որի հիմքում Փարիզի կոմունայի պատմությունն է:

ՎԱԼԵՍՅԱՆ Արմեն Լեմվելի (ծ. 1964), աշխարհագետ: Աշխարհագր. գիտ. դ–ր (1995): Լեմվել *Վալեսյանի* որդին: Աշխ–ները վերաբերում են աշխարհագրության տեսության ու մեթոդաբանության, բնակչության ու բնակավայրերի և քաղ. աշխարհագրության հարցերին:

ՎԱԼԵՍՅԱՆ Լեմվել Հակոբի (1929–2009), աշխարհագետ: Աշխարհագր. գիտ. դ–ր (1968), պրոֆ. (1972): Արմեն *Վալեսյանի* հայրը: 1979–87–ին՝ ՀՊՄԻ ռեկտոր: Աշխ–ները վերաբերում են հաս. աշխարհագրության տեսության, արտադր–յան տեղաբաշխման և տարածք. կազմակերպման, բնական պաշարների գնահատման ու օգտագործման, երկրաէկոլոգիայի, քաղ. աշխարհագրության, թեմատիկ քարտեզագրության հարցերին: Մասնակցել է ՀՀ աշխարհագրության համալիր և ճյուղ. ատլասների, Հայաստանի Ազգ. ատլասի (2007, 1–ին հատորի պատ. քարտուղար) կազմման աշխ–ներին: Հայկ. աշխարհագր. ընկ–յան նախագահ (1975–2009): Միջազգ. էկոլոգ. (1995), ՌԴ կրթության (1999) ակադ–ների անդամ:

ՎԱԼԵՏԱ (Valletta), Մալթայի մայրաքաղաքը, նվինգստ Միջերկր. ծովի ափին: Բն.՝ 5,7 հզ. (2010): Ունի օդանավակայան: Գործում է համալսարան: Կան XVI–XVIII դդ–ի ճարտ. հուշարձաններ: Հիմնադրվել է 1560–ական թթ–ին: Կոչվել է Հիվանդախնամների միաբանության մագիստրոս դե Լա Վալետի անունով: Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՎԱԼԵՐԱ, Վալերա ի Ալկալա Գալյանո (Valera y Alcalá Galiano), Խուան (1824–1905), իսպանացի գրող: Հեղինակ է «Պեպիտա Խիմենես» (1874, հայ. հրտ.՝ 1967), «Դոնյա Լյուս» (1879), «Դոկտոր Ֆաուստի պատրանքները» (1875) հոգեբ., ռեալիստ. վեպերի, նաև գրաքննադատ. հոդվածների:

ՎԱԼԵՐԻ (Valéry) Պոլ (1871–1945), ֆրանսիացի բանաստեղծ: Ֆրանսիայի ակադ–ի անդամ (1927): Հեղինակ է «Հին բանաստեղծությունների ալբոմ» (1920), «Թովչանքներ» (1922) քնարա–փիլ. բանաստեղծությունների ժող–ների, «Երիտասարդ Պարքը» (1917), «Ծովային գերեզմանոցը» (1920), «Իմ Ֆաուստը» (անավարտ) պոեմների, Մալարմեի, Շ. Բոդլերի, Լեոնարդո դա Վինչիի, Ստենդալի և ուր. մասին էսսեների, «Տետրակներ» (1894–1945, հրտ.՝ 1957–61) օրագրությունների:

ՎԱԼԵՐԻԱՆԱԹԹՈՒ, $CH_3(CH_2)_3COOH$, միահիմն սահման. օրգ. թթու, $t_{եռ.}$՝ 185,4°C: Պարունակվում է կատվախոտի արմատներում: Օգտագործում են հոտավետ, դեղորայք. և այլ նյութերի արտադր–յան մեջ: Տես նաև *Իզովալերիանաթթու:*

ՎԱԼԵՐԻԱՆՈՍ (Valerianus) Պուբլիոս Լիկինիոս (193–260), Հռոմի կայսր՝ 253–ից: Կառավարել է որդու՝ Գալիենոսի հետ: Հալածել է քրիստոնյաներին: 256–ին արշավել է պարսիկների դեմ, նրանց վտարել Անտիոքից, սակայն Եդեսիայի մոտ պարտվել և գերի է ընկել (260):

ՎԱԼԵՐՄԹԵՅՆ (Wallerstein) Իմանուիլ (ծ. 1930), ամերիկացի սոցիոլոգ: Աշխարհահամակարգ. վերլուծության հիմնադիրներից: Հեղինակ է «Ազատականությունից հետո» (1995), «Կապիտալիզմն ապագա ունի» (2013) և այլ աշխ–ների: Միջազգ. սոցիոլոգ. ընկ–յան նախագահ (1994–98):

ՎԱԼԶԵՐ (Walser) Մարտին (ծ. 1927), գերմանացի գրող: Հեղինակ է «Խաղի կեսը» (1960), «Միաեղջյուրը» (1966), «Աղետ» (1973) եռերգության, «Գալիստյայի հիվանդությունը» (1972), «Սիրո հակառակ կողմում» (1976), «Կարապի տունը» (1980), «Ալերախություն» (1985), «Դոռն կամ Մանկության թանգարան» (1991), «Սիրող տղամարդը» (2008), ինքնակենսագր. «Կենսական ակունք» (1998) վեպերի ևն:

ՎԱԼԻԴՈԼ, անոթալայնիչ դեղամիջոց, մենթոլի 25–30–%–անոց լուծույթն իզովալերիանաթթվի մեթիլեթերում: Ունի հանգստացնող, հակափսխեցուցիչ հատկություն: Թողարկվում է կաթիլների, պատիճների և հաբերի ձևով:

ՎԱԼԻԵ (Valier) Մաքս (1895–1930), գերմանացի ճարտարագետ, տիեզ. թռիչքների գաղափարի քարոզիչ: 1928–29–ին փորձել է հրթիռ. շարժիչները կիրառել ինքնաթիռներում, ավտոմեքենաներում և այլուր: Զոհվել է հեղուկ. հրթիռ. շարժիչներով փորձեր կատարելիս:

ՎԱԼԻԵՀՈ (Vallejo) Սեսար (1892–1938), պերուացի գրող: 1923–ից՝ վտարանդի: Հեղինակ է «Սև մունետիկներ» (1918), «Տրիլսե» (1922), «Մարդկային բանաստեղծություններ» (հրտ.՝ 1939) ժող–ների, Պերուի ինդկացի աշխատավորների մասին «Վոլֆրամ» (1931) վեպի, «Ռուսաստան, 1931 թվական» (1931) ակնարկների ժող–ի:

ՎԱԼԻՆ, α–ամինաիզովալերիանաթթու, $(CH_3)_2CHCH(NH_2)COOH$, անփոխարինելի ամինաթթու: Մտնում է բոլոր սպիտակուցների կազմի մեջ: Պարունակվում է մարդու շիճուկային ալբումիններում, կաթի կազեինում (7–8 %), շարակց. հյուսվածքի էլաստինում (13–14 %): Պանտոտենաթթվի (վիտամին B_3) և պենիցիլինի կենսասինթեզի ելանյութ է:

ՎԱԼԻՄՆԵՐԻԱ, (անգլ.՝ Vallisneria), ջրազարդազգիների ընտանիքի բազմամյա ջրասույզ բույսերի ցեղ: Հայտնի է 6 տեսակ՝ արևադարձ., մերձարևադարձ. և բարեխառն շրջանների քաղցրահամ ջրավազաններում ու դանդաղահոս գետերում: Երկտուն բույս է: Իգական ծաղիկը երկար ծաղկակոթունով հասնում է մինչև ջրի մակերևույթ, փոշոտվում, ապա պարուրաձև ոլորվում, նորից ընկղմվում է ջրի մեջ, որտեղ և հասունանում է պտուղը: Կեր է ձկների, ջրլող թռչունների և ջր. այլ կենդանիների համար: Հաճախ աճեցվում է աքվարիումներում:

ՎԱԼԼԵ–ԻՆԿԼԱՆ (Valle–Inclán) Ռոման Մարիա դել (1869–1936), իսպանացի գրող: Զգալի է մոդեռնիզմի ազդեցությունը («Սոնատներ», վիպակաշար, 1902–05): Հեղինակ է «Բռնակալ Բանդերասը» (1926) վեպ–պամֆլետի, «Իբերական կրկեսի մրցասպարեզը» («Հրաշքների արքունիքը», 1927, «Կեցցե իմ տիրակալը», 1928) պատմ. երկերգության, նաև դրամաների:

ՎԱԼԼԻԵՐԵՆ, ուելսերեն, *ուելսցիների* լեզուն: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի կելտ. ճյուղին: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՎԱԼԼԻՍ, Ուոլիս (Wallis), Ջոն (1616–1703), անգլիացի մաթեմատիկոս: Լոնդոնի թագավոր. ընկ–յան հիմնադիրներից (1662): Նրա «Անվերջության թվաբանություն» (1655) աշխ–ը կարևոր դեր է խաղացել անվերջ փոքրերի հաշվի ստեղծման գործում:

ՎԱԼԼՈՆՆԵՐ, ժողդ Բելգիայում (մոտ 3,4 մլն, 2010): Ապրում են նաև Ֆրանսիայում,

ԱՄՆ-ում և այլուր: Ընդհ. թիվը՝ շուրջ 4 մլն: Խոսում են ֆրանս-ի վալլոնյան բարբառով: Հավատացյալները կաթոլիկ են:

ՎԱԼԿԻՐԻԱՆԵՐ (հին սկանդ.՝ Valkyrja – մահացածներին ընտրող), ռազմատենչ կույսեր սկանդ. դից-յան մեջ, որոնք Օդին աստծու կամքով որոշել են մարտերի ելքը: Հափշտակել են զոհված ամենաքաջ ռազմիկներին և տարել Վալհալլա: Վ.-ի կերպարը դրսևորվել է երաժշտության մեջ և պոեզիայում (Ռ. Վագների «Վալկիրիա» օպերան, ևն):

ՎԱԼԿՈՏ (Walcot) Ուիլյամ Ֆրանցևիչ (1874–1943), ռուս. (ծագումով՝ անգլիացի) ճարտ.: Մոսկվայում մոդեռն ոճով կառուցել է «Մետրոպոլ» հյուրանոցը (1899–1905), Մ. Ֆ. Յակունչիկովայի առանձնատունը (1899–1900): 1908-ից՝ Մեծ Բրիտանիայում (համահեղ.՝ Նյու Դելիի, 1912–14, «Մեծ Լոնդոնի», 1944, նախագծերի):

ՎԱԼՄԱՐ (Մարգարյան Վոլոդյա Մամիկոնի, ծ. 1948), նկարիչ: ՀՀ ժող. նկարիչ (2015): Նկարներում («Ինքնանկար», 1973, «Հայտնություն», 1981, «XX դարի ռիթմեր», 1976-ից, «Արհավիրք», 1988-ից, վերջին երկուսը՝ նկարաշար, «1915 թվական», 2005, «Չգրված երգ», 2006, «Իսպանական շարք», ևն) մարմնավորել է մարդկային հույզերի տարաբնույթ իրավիճակներ: 2004-ից Երևանում գործում է «Վալմար» արվ-ի սրահը: ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2008), «Գրիգոր Նարեկացի» (2013), ՀՀ վարչապետի (2011) հուշամեդալներ: Դուստրը՝ **Հռիփսիմե Մարգարյան** (ծ. 1975), նկարչուհի: Գործերից են՝ «Տպավորություն» (2000), «Սլացք» (2001), «Իմ աշխարհը» (2002), «Կոմպոզիցիա № 1, 2» (2004), «Երազ» (2006) շարքերը ևն:

ՎԱԼԱՅԱԴՈԼԻԴ (Valladolid), ք. Իսպանիայում, Կաստիլիա Լեոն ԻՄ-ի համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 316,3 հզ. (2010): Հայտնի է 1074-ից: Կան XI–XVI դդ-ի ճարտ. հուշարձաններ:

ՎԱԼՇԱՓ (Walschap) Գերարդ (1898–1989), բելգիացի նիդեռլանդագիր գրող: Հեղինակ է «Ռոուտհոֆների ընտանիքը» (1929–33) եռերգության, որտեղ քննադատել է ժամանակի հաս-յան բարքերը, հակագաղութատիրության թեմայով «Ապստամբություն Կոնգոյում» (1953), անհատի կայացմանը նվիրված «Անառակ որդին» (1958), «Նմանակը» (1964) և այլ վեպերի:

ՎԱԼՊՈՒՐԳԻԱՆ ԳԻՇԵՐ, գերմ. հեթանոս. տոն. նշվել է ապրիլի 30–մայիսի 1-ի գիշերը (սր Վալբուրգի օրը): Ըստ VIII դ-ից ավանդված գերմ. ժող. հավատալիքների՝ վհուկների տոն («մեծ գիշերաժողով») է Բրոկկեն լ-ան (Գերմանիայում) վրա: Կոչվել է կաթոլիկ. միանձնուհի սուրբ Վալպուրգիայի անունով:

ՎԱԼՍ (ֆրանս.՝ valse, գերմ.՝ Walzer), հանդիսապար, սահուն պտույտներով զուգապար: XIX դ-ից տարածվել է Եվրոպայում, մասնավորապես՝ վիեննականը (Յ. Շտրաուս-հայր, Յ. Շտրաուս-որդի): Վ. և նրա որոշ հատկանիշներ մի շարք կոմպոզիտորներ (Ա. Խաչատրյանի «Վալսը» Յ. Մ. Լերմոնտովի «Դիմակահանդես» ներկայացումից ևն) օգտագործել են իրենց վոկալ և գործիք. ստեղծագործություններում: Երաժշտ. չափը՝ 3/4, 3/8, 6/8, տեմպը՝ չափավոր արագ:

ՎԱԼՏԵՐ Անտոն Կառլովիչ (1905–1965), ուկրաինացի ատոմ. ֆիզիկոս (ծագումով՝ գերմանացի): Ուկրաինայի ԳԱ ակադ. (1951): Գիտ. և տեխնիկայի վաստ. գործիչ (1951): Ղեկավարել է խորհրդ. առաջին էլեկտրոնների էլեկտրաստատիկ. արագացուցչի կառուցման աշխ-ները (մինչև 25 *ՄէՎ*, 1935–36), մասնակցել էլեկտրոնների գծային արագացուցչի (մինչև 1,8 *ԳէՎ*) կառուցմանը (1964, Խարկով): Ուկրաինայի Պետ. մրց. (1993, հետմահու):

ՎԱԼՏԵՐ (Walter) Օտտո Ֆրիդրիխ (1928–1994), շվեյցարացի գերմանագիր գրող: «Համրը» (1959), «Պարոն Թուրելը» (1962) վեպերի հիմքում օտարացումն է, մեղքի զգացումը, «Առաջին անկարգությունները» (1972), «Վայրենացում» (1977) վեպերում քննել է հաս. գիտակցության խնդիրը: Հեղինակ է նաև «Ինչպես է բետոնը խոտածածկվում» (1979) և այլ վիպակների:

«ՎԱԼՏԵՐ», գերմ. համանուն ֆիրմայի ինքնաշխատ, 8–լիցքանի ատրճանակ, տրամաչափը՝ 9 *մմ*: Գերմ. բանակի սպառազինության մեջ էր (1938-ի նմուշը): Օգտագործվել է ԵՀՊ-ում:

ՎԱԼՏԵՐ ՇԱՏԻԼԻՈՆԱՑԻ (Gualterus de Castiglione, մոտ 1135–մոտ 1200), լատին բանաստեղծ, վագանտների պոեզիայի խոշորագույն ներկայացուցիչներից: Հեղինակ է Ալեքսանդր Մակեդոնացու մասին «Ալեքսանդրեիդա» վարքագր., ուսուցող. պոեմի, բարոյաքննադատ. և սիրային բանաստեղծությունների:

ՎԱԼՏԵՐ ՍԵՆ ՎԻԿՏՈՐ (Gualterius de Sancto Victore, ծ. թ. անհտ–1180-ից հետո), միջնադար. աստվածաբան: Հեղինակ է «Ֆրանսիայի չորս լաբիրինթների դեմ» (1177 կամ 1178) բանավիճ. տրակտատի, որն ուղղված էր Պիեռ Աբելյարի, Պետրոս Լոմբարդացու, Պետրոս Պուատեացու, Ժիլբեր Պոռետացու դեմ:

ՎԱԼՏՈՆ (Valton, Վալլիկիվի) Արվո (ծ. 1935), էստոնացի գրող: Հեղինակ է գրոտեսկային-երգիծ. գործերի («Ութ ճապոնուհիներ», 1968, ևն), սոցիալ-կենցաղ. թեմաներով պատմվածքների, պատմ. նովելների, փիլ. առակների («Մուստամյաեսկյան սեր», 1978, «Հին հաշիվներ», 1981, ժող-ներ), Չինգիս խանի մասին պատմավեպի, աֆորիզմների («Հապճեպ զրջում», 1989), բանաստեղծությունների, հեքիաթների: Վ.-ի «Ուղիները միանում են հավերժության մեջ» (1978) գրքում չարի ու բարու առճակատման թեման է:

ՎԱԼՐԱՍ (Walras) Լեոն Մարի Էսպրի (1834–1910), շվեյցարացի տնտեսագետ: Կառուցել է ժող. տնտ-յան ընդհ. տնտ-մաթ. մոդել, որը հայտնի է ընդհ. տնտ. հավասարակշռության համակարգ անվամբ:

ՎԱԼՈՒԱ (Valois) Նինետ դը (Իդրիս Ստաննուս, Stannus, 1898–2001), անգլ. բալետի ֆրանսիացի արտիստուհի, բալետմայստեր: «Մեդլերս-Ուելս բալե» (1957-ից՝ Մեծ Բրիտանիայի թագավոր. բալետ) թատերախմբի հիմնադիրներից, 1931–63-ին՝ գեղ. ղեկ.:

ՎԱԼՈՒԱՆԵՐ (Valois), ֆրանսիացի թագավորների հարստություն՝ 1328–1589-ին, *Կապետինգների* շառավիղը: Վ.-ից 1-ին թագավորը Ֆիլիպ VI-ն էր: Հարստությունն ընդհատվել է կրոն. պատերազմների ժամանակ (Հենրի III-ի սպանությամբ): Վ.-ի տոհմի վերջին շառավիղը Մարգարիտ Վ. էր (1553–1615)՝ Հենրի IV Բուրբոնի (1589–1610) 1-ին կինը:

ՎԱԽ, Վախ Կոնստանտնտ, ք. Պակիստանի հս-արլ-ում: Բն.՝ 265,2 հզ. (2010):

ՎԱԽ, հիվանդագին վիճակ, սարսափի, երկյուղի զգացողություն, որ մարդ կարող է ունենալ ղեկավարությունից, բարձրյունից, տարածությունից. ապագայից, ինչ-որ մեկին կորցնելու մտքից ևն:

ՎԱԽԱՆՅԱՆ ԼԵՒՈՆԱՐԴԱ, Պամիրի հվ-ում՝ Տաջիկստանում և Աֆղանստանում: Երկ.՝ 160 *կմ*, բարձր.՝ մինչև 6281 *մ*: Կան սառցադաշտեր (Տաջիկստանում՝ 96,2 *կմ*²):

ՎԱԽԹԱՆԳ I Գորգասալ (պարսկ.՝ գայլի գլուխ, այդպես են պարսիկներն անվանել Վ. I-ին, որի սաղավարտի վրա պատկերված էր գայլ, մոտ 440-ական թթ.–502), Քարթլիի թագավոր: Երկարատև պայքար է մղել Սասանյան Իրանի դեմ Քարթլիի անկախության համար: 482-ին նա ապստամբել և զինօգնություն է խնդրել հայերից: Հայկ. զորքը, Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ, եկել է օգնության: Հայ-վրաց. միացյալ բանակը *Ճարմանայնի ճակատամարտում* (482) վրաց ավատատերերի դավաճանության պատճառով պարտություն է կրել: Սահացել է մարտում ստացած ծանր վերքից:

ՎԱԽԹԱՆԳ VI (1675–1737), Քարթլիի թագավոր՝ 1716–24-ին, փոխարքա՝ 1703–14-ին: Կազմել է «Դաստուրլամալի» (պետ. կառավարման վերաբերյալ կարգադրությունների ու հրահանգների ժող.) աշխ-ը, վրաց. ավատ. իրավունքի օրենսգիրքը (տես ***Վախթանգի օրենքներ***): Վ. VI-ի նախաձեռնությամբ 1709-ին Թիֆլիսում հիմնադրվել է վրաց. առաջին տպարանը: Վ. VI ունեցել է ռուս. կողմնորոշում. Պետրոս I-ը նրան խոստացել էր ստեղծել հայ-վրաց. պետություն՝ Ռուսաստանի հովանու ներքո: Շահ Թահմազ II-ը Վ. VI-ին մեղադրել է պետ. դավաճանության մեջ և 1722-ի վերջին գրկել զորահրամ-ի իրավունքներից: Վ. VI ստիպված թողել է Վրաստանը և ընտանիքով ու մեծ շքախմբով (1200 մարդ) անցել Ռուսաստան:

ՎԱԽԹԱՆԳԻ ՕՐԵՆՔՆԵՐ, «հավաք օրինաց», ավատ. իրավունքի ժող. Վրաստանում: Կազմվել է ***Վախթանգ VI***-ի ղեկավարությամբ 1705–08-ին: Վ. օ-ի աղբյուրներն են Աստվածաշունչը, բյուզ., հայկ. և վրաց. իրավունքները և Վախթանգի «Գիրք օրինացը»: Թեև կազմվել է քարթվելների թագավորությունում, սակայն գործել է Վրաստանի ողջ տարածքում:

ՎԱԽԹԱՆԳՈՎ Եվգենի Բագրատի (1883–1922), ռեժ., դերասան, թատեր. գործիչ: 1913-ին Մոսկվայում հիմնադրել է Ռուս. թատեր. ստուդիա (1917–20-ին՝ Վախթանգովի անվ., 1926-ից՝ Վախթանգովի անվ. թատրոն): Դերերից են՝ Գնչու (Լ. Ն. Տոլստոյի «Կենդանի դիակ»), Թեկլտոն (Ջ. Դիքենսի «Օջախի ճռիկը»), Բրենդել (Հ. Իբսենի «Ռոսմերսհոլմ») ևն, բեմադրություններից՝ Մ. Մետեռլինկի «Կապույտ թռչունը» (Լ. Սուլերժիցկու հետ, 1910, Փարիզ), Գ. Հաուպտմանի «Հաշտության տոնը» (1913), Յ. Խ. Բեռգերի «Զրհեղեղ» (1919, Ֆրեզերի դերում՝ Վ.), Ա. Պ. Չեխովի «Հարսանիք» (1920), Ա. Սթրինդբերգի «Էրիկ XIV» (1921) ևն, որտեղ Վ. իրականացրել է իր նորարար. մտահղացումները: Դերասան. արվ-ում ստեղծել է ֆանտաստիկ. ռեալիզմը:

ՎԱԽՇ, գետ Տաջիկստանում, Ֆյանջի հետ միավորվելով՝ առաջացնում է Ամուդարիան: Երկ.՝ 524 *կմ*, ավազանը՝ 39,1 հզ. *կմ*², ջրի միջին ծախսը՝ 666 *մ*³/*վ*: Գործում

է ջրէկների կասկադ (Նուրեկի, Գոլով-նայա ևն):

ՎԱԿԱՅԱՄԱ, ք–նվի՝նգաստ Ճապոնիայի Հոնսյու կղզում, համանուն պրեֆեկտուրայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 365 հզ. (2010): Հայտնի է XVI դ–ից:

ՎԱԿՑԻՆԱ (լատ.՝ vaccina – կովի), կենդանի վնասազերծած կամ սպանված միկրոօրգանիզմներից (նաև մանրէային բջջի առանձին հակածինային բաղադրամասերից) և կենսագործունեության արգասիքներից (տես *Անապրոքսին*) ստացված պատրաստուկ: Օգտագործվում է բուժ. և կանխարգելիչ նպատակներով: Տես նաև *Իմունացում*:

ՎԱԿՈՒՈԼՆԵՐ (ֆրանս.՝ vacuole, < լատ. vacuus – դատարկ), խոռոչներ կենդ. և բուս. բջիջներում կամ միաբջիջ օրգանիզմներում: Տարբերում են մարսող. և կծկող. (բարախող) Վ., որոնք կարգավորում են օսմոտիկ. ճնշումը և նպաստում օրգանիզմից քայքայման նյութերի դուրսբերմանը:

ՎԱԿՈՒՈՒՄ (լատ.՝ vacuum – դատարկություն), 1. գազի վիճակը մթն–ից ցածր ճնշումների դեպքում: Տարբերում են ցածր (վակուում. սարքավորումներում դրան համապատասխանում է $p > 100$ *Պա* ճնշումներ տիրույթը), միջին ($0{,}1$ *Պա* $< p <$ < 100 *Պա*), բարձր (10^{-6} *Պա* $< p < 0{,}1$ *Պա*) և գերբարձր ($p < 10^{-6}$ *Պա*) Վ.–ներ: Վ. հասկացությունը գազի համար կիրառվում է և փակ անոթում, և ազատ տարածություններում, օր.՝ տիեզերքում: 2. **Դաշտի քվանտային տեսության մեջ**, քվանտացված դաշտի հիմն. էներգ. վիճակ, որը բնորոշվում է փոքրագույն էներգիայով և 0–ի հավասար քվանտ. թվերով (իմպուլսով, անկյուն. մոմենտով, էլ. լիցքով ևն): Մասնիկների՝ դաշտի քվանտների միջին թիվը Վ.–ում հավասար է 0–ի, սակայն Վ.–ում կարող են առաջանալ վիրտուալ մասնիկներ, որոնք ազդում են ֆիզ. շարժընթացների վրա:

ՎԱԿՈՒՈՒՄ ԷՔՍՏՐԱԿՑԻԱ, ծննդաբերության ժամանակ պտղի դուրսբերման միջամտություն՝ հատուկ գործիքի (վակուում–էքստրակտոր, գավաթիկ, որը դեպի իրեն է քաշում պտղի գլուխը) օգնությամբ: Կիրառում են առավելապես պտղի սկսվող շնչահեղձության դեպքում:

ՎԱԿՈՒՈՒՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ, *էլեկտրոնիկայի* բաժին, որը ներառում է ազատ էլեկտրոնների աղբյուրների, էլեկտրոնների հոսքերի և վակուումում էլեկտրամագնիս. դաշտերի հետ դրանց փոխազդեցության կառավարման համակարգերի մշակումն ու պատրաստումը, նաև տարբեր նշանակումների վակուում. էլեկտրոն. սարքերի և սարքավորումների ստեղծումը:

ՎԱԿՈՒՈՒՄՈՄԱՉԱՓ, վակուում. ճնշաչափ, նոսրացված յուղի (10^{-5}–10^{-12} *Պա*) ճնշման չափման սարք: Սովորաբար կազմված է ճնշումն այլ ֆիզ. մեծության (ազդանշան) փոխարկող փոխակերպիչից (տվիչ) և այդ ազդանշանը չափող բլոկից: Տարածված են հեղուկ., մեխ., իոնացման, մագնիս., էլ. պարպման, մածուցիկ և ռադիոչափ. Վ.–ներ:

ՎԱՀԱԲԱԿԱՆՆԵՐ, **վահհաբականներ**, 1740–ական թթ–ին Նեջդում (Կենտր. Արաբիա) առաջացած մահմեդ. կրոնա–քաղ. հոսանքի հետևորդներ: Հիմնադիր–տեսաբանը Մոհամմեդ իբն Աբդ ալ–Վահհաբն էր (1703–1787), որի ուսմունքի հիմն. դրույթը մարդակերպ միակ Աստծու նկատմամբ բացարձակ հավատն է: Այստեղից էլ՝ Վ.–ի մուվահհիդուն (միաստվածյաններ) ինքնանվանումը: Վ.–ին բնորոշ էին ծայրահեղության հասնող մաքրակրոնությունը և *ջիհադի* ջատագովումը: Այն բացահայտորեն ուղղված էր օսմ. «թուրքականացված» իսլամի դեմ: XIX դ–ի 2–րդ կեսին Սաուդ տոհմը Վ.–ի ուսմունքի դրոշի ներքո Կենտր. Արաբիայում ստեղծել է քաղ. իշխանություն, որը հետզհետե Արաբ. թ–կղզին միավորել է ավատ. մեկ պետության (այժմ՝ Սաուդյան Արաբիա) մեջ: Վահաբականությունը Սաուդյան Արաբիայում հռչակված է պետ., պաշտոն. գաղափարախոսություն:

ՎԱՀԱԲԶԱԴԵ Բախտիար Սահմուդօղլի (1925–2009), ադրբեջանցի գրող, գրականագետ: Ադրբ. ԽՍՀ ժող. բանաստեղծ (1984): Հեղինակ է բանաստեղծությունների և պոեմների ժող–ների, պիեսների, «Սամեդ Վուրղուն» (1968) մենագրության, «Բանաստեղծը և ժամանակը» (1975) հոդվածների ժող–ի: Կատարել է թարգմանություններ (այդ թվում՝ Ա. Իսահակյանի, Ա. Գրաշու գործերից): ԽՍՀՄ (1976), Ադրբ. ԽՍՀ (1976) Պետ. մրց–ներ:

ՎԱՀԱԳՆ, պատերազմի, քաջության և հաղթանակի գերագույն աստվածը հայկ. դից–յան մեջ: Վ.–ի գլխ. տաճարը կամ մեհյանը Տարոն գվո–ի Վիշապ ք–ավանին մերձակա լեռան լանջին էր: Վ.՝նույնացվել է Հրահատ (Սարս) մոլորակի հետ, որին հին հայերն անվանել են նաև Ատրահեր:

ՎԱՀԱԳՆ, հայկ. հեթանոս. տոմարի ամիսների 27–րդ օրվա անվանումը:

«ՎԱՀԱԳՆԻ ԵՐԳԸ», «*Վահագնին* ծնունդը», *Վահագնին* նվիրված ձոներգ, հայ հնագույն առասպելաբան. երգ: Գրի է առել և ավանդել *Մովսես Խորենացին* V դ–ում («Պատմութիւն Հայոց», Ա, ԼԱ): «Վ. ե.» ինդեվրոպ. առասպելաբանաստեղծ. համակարգում դիցածնման վաղնջագույն հիմներգ է:

ՎԱՀԱՆ (ծ. թ. անհտ–636), բյուզանդացի հայազգի զորավար: 628–ին գործուն մասնակցություն է ունեցել Իրանի դեմ պատերազմին: Այնուհետև պատերազմել է արաբների դեմ, Էմեսայում (Հոմս) պարտության մատնել (635) նրանց և հալածել մինչև Դամասկոս: 636–ին արաբները հսկայական բանակով ներխուժել են Դամասկոս, պարտության մատնել Վ.–ի զինակից Թեոդորոսին, իսկ Վ.–ի զինվորներն ապստամբել են Հերակլիոս կայսեր դեմ և Վ.–ին հռչակել կայսր, սակայն վերջինս կայսր չի դարձել:

ՎԱՀԱՆ (Մանվելյան Վահան, Տուղրամայան Կարապետ, 1870–ական թթ–ի 1–ին կես–1904), ազգ–ազատագր. շարժման գործիչ, ֆիդայի: ՀՀԴ կուս–յան անդամ: Գործել է Կ. Պոլսում: 1902–04–ին՝ ՀՀԴ Սասունի լիազոր ներկայացուցիչ: 1904–ի Սասունի ապստամբության փաստացի հրամ–ներից էր: Զոհվել է ապստամբությունից հետո՝ Գելիեգուզան–Մուշ ճանապարհին:

ՎԱՀԱՆ (լատ.՝ scutum), հասարական. համաստեղություն՝ Օձ, Աղեղնավոր և Արծիվ համաստեղությունների միջև: Պայծառ աստղեր չի պարունակում: ՀՀ–ի տարածքից լավ է երևում գարնանը, ամռանը և աշնանը:

ՎԱՀԱՆ, հատող, հարվածող կամ խոցող սառը զենքերից պաշտպանվելու հնագույն զինատեսակ: Սարտիկը կրել է սովորաբար ձախ ձեռքին, իսկ աջ ձեռքով գործադրել հարձակողական զենքը: Հանդիպում են տարբեր ձևերի (կլոր, ձվաձիր, եռանկյուն ևն) ու չափերի Վ.–ներ:

«ՎԱՀԱՆ», հաս–քաղ. գր. շաբաթաթերթ (1991–ից, Պլովդիվ՝ հայ., բուլղ.): Խմբ–ներ՝ Գրիգոր Սարաֆյան, Հարի Նիկողոսյան:

ՎԱՀԱՆ Ա. ՍՅՈՒՆԵՑԻ (ծ. թ. անհտ–972), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 968–969–ին: Հաջորդել է *Անանիա Ա. Մոկացուն*: Եղել է Վահանավանքի վանահայր, 958–ից 6 տարի գլխավորել է Սյունյաց աթոռը: 969–ին Անիի եկեղեց. ժողովը գահընկեց է արել Վ. Ա. Ս–ուն և նոր կաթողիկոս ընտրել Ստեփանոս Գ Սևանցուն:

ՎԱՀԱՆ ԳՈՂԹՆԱՑԻ (մոտ 700–737), իշխան: 705–ին Նախճավանի և Խրամի կոտորածի ժամանակ հոր՝ Խոսրով Գողթնացու զոհվելուց հետո, մանուկ Վ. Գ. բռնի տարվել է Արաբ. խալիֆություն (Ասորիք), բռնի հավատափոխ արվել և վերանվանվել Վահապ, դարձել արքունի դպրապետ: 717–ին եկել է Հայաստան ու այլևս չի վերադարձել: Օմար II խալիֆի մահից (720) հետո կրկին դարձել է քրիստոնյա և անվանակոչվել Վահան: Սակայն արաբները հետապնդել են նրան և սպանել:

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ (440–ական թթ.–505–ից հետո), Հայոց սպարապետ, մարզպան՝ մոտ 487–505–ին: 451–ի Ավարայրի ճակատամարտում զոհված Համայակ Մամիկոնյանի և Զվիկ իշխանուհու (Արծրունյաց տոհմից) ավագ որդին, *Վարդ Մամիկոնյանի* եղբայրը: Ավարայրի ճակատամարտից հետո եղբայրների՝ Վասակի և Արտաշեսի հետ պատանդ է տարվել Պարսից արքունիք: 455–ին Գուգարքի բդեշխ Աշուշան նրանց ազատել է պատանդությունից: Վ. Մ. հաստատվել է իր տոհմ. ոստանում, դարձել տոհմի նահապետը: *Սահակ Բագրատունու* և Վ. Մ–ի գլխավորությամբ նախարարներն ապստամբել են Պարսից տիրապետության դեմ (*Վահանանց պատերազմ 481–484*): *Նվարսակի հաշտության պայմանագրով* (484) Վ. Մ. ճանաչվել է Հայոց մարզպան, ձեռնամուխ եղել երկրի բարեկարգմանը: Աքսորից վերադարձրել է *Ղազար Փարպեցուն*, որն էլ Վ. Մ–ի պատվերով գրել է իր «Հայոց պատմություն» երկը:

ՎԱՀԱՆԱԳԵՂԶԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ, թիրեոիդիտ: Պատճառները՝ ոչ առանձնահատուկ (վիրուս., ստրեպտոստաֆիլակոկ.) կամ առանձնահատուկ (տուբերկուլոզ, սիֆիլիս ևն) վարակիչ հիվանդությունները, թունավորումները (կապարով, ածխածնի օքսիդով) և աուտոիմուն. հիվանդությունները: Լինում են սուր, ենթասուր և քրոնիկ.: Ախտանշանները՝ ցավեր՝ կուլ տալիս և գլուխը հետ շարժելիս, ջերմության բարձրացում, տեղային ավշային հանգույցների ցավոտություն: Բուժումը՝ հակաբորբոք. և ցավազրկող դեղամիջոցներ, հակաբիոտիկներ, կորտիկոստերոիդներ, թիրեոիդին, վիտամիններ:

ՎԱՀԱՆԱԴՈՒՆԶՆԵՐ (Gloydius), թունավոր օձերի ընտանիք: Երկ.՝ մինչև 1,6 *մ*: Գլխի վրա որոշ վահանիկներ մեծացած են (այստեղից՝ անվանումը): Հայտնի է 14 տեսակ՝ Եվրասիայում, Հս. և Կենտր. Ամերիկայում, Ռուսաստանում: Կծածը ցավոտ է: Թույնն օգտագործում են բժշկության մեջ:

ՎԱՀԱՆԱԿԻՐՆԵՐ (Diaspididae), կոկցիդների ենթակարգի միջատների ընտանիքի խումբ: Մեջքի վրա ունեն պինդ վահանիկ

(այստեղից՝ անվանումը)։ Էգի երկ.՝ 0,8–2 *մմ* (արուներն ավելի մանր են)։ Հայտնի է ավելի քան 2000 տեսակ, ՀՀ–ում՝ 60՝ առավելապես տաք գոտիներում։ Խնձորենու երիտասարդ ճյուղերի վրա մակաբուծում են ստորակետանման Վ.։ Դեղին, արմավենու, գիհու, դափնեվարդի և այլ Վ. ջերմատնային մերձարևադարձ. բույսերի մակաբույծներ են։

ՎԱՀԱՆԱՁԵՎ ԳԵՂՁ, մարդու և ողնաշարավոր կենդանիների ներզատիչ գեղձ։ Տեղակայված է պարանոցին՝ կոկորդային աճառների վրա։ Բաղկացած է 2 բլթից և նեղուցից։ Արտադրում է թիրօքսին, եռայոդ թիրոնին, նաև թիրեոկալցիտոնին (մարդու և կաթնասուն կենդանիների մոտ)։ Կարգավորում է օրգանիզմի աճն ու զարգացումը (հյուսվածքների տարբերակումը, նյութափոխանակության ինտենսիվությունը են)։ Վ. գ–ի ախտահարումը հանգեցնում է որոշ հիվանդությունների (օր.՝ միքսեդեմայի, բազեդովյան հիվանդության) առաջացման։

ՎԱՀԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄ 481–484, *Վահան Մամիկոնյանի* գլխավորած ազգ–ազատագր. կռիվները Պարսից տիրապետության դեմ։ ***Վարդանանց պատերազմից*** հետո ժող. ընդվզումները կրկին աշխուժացել են 470–ական թթ–ին՝ պայմանավորված Հայոց կաթողիկոս *Գյուտ Ա Արահեզացու* և Վահան Մամիկոնյանի հայրենասիր. գործունեությամբ։ Օգտվելով ստեղծված իրավիճակից (Վրաց թագավոր ***Վախթանգ I*** Գորգասալն ապստամբել էր Պարսից տիրապետության դեմ)՝ հայ զորականներն ու իշխանները վճռել են անցնել բացահայտ պայքարի՝ իրենց գլխավոր ընտրելով Վահան Մամիկոնյանին։ Պատերազմ. գործողությունները փոփոխական հաջողություններով շարունակվել են մի քանի տարի ***(Ակոռիի ճակատամարտ 481***, ***Ներսեհապատի ճակատամարտ 482***, ***Ճարմանայնի ճակատամարտ 482***)։ Պերոզ արքայի զոհվելուց (484) հետո Պարսից նոր արքա Վաղարշը հարկադրված Հեր գվո–ի Նվարսակ գ–ում կնքել է հաշտության պայմանագիր, որով վերահաստատվել է Հայաստանի վարչաքաղ. և հոգևոր ներքին ինքնուրույնությունը։ Վահան Մամիկոնյանը ճանաչվել է Հայոց սպարապետ, ապա՝ նաև մարզպան։

ՎԱՀԱՆԱՊՏԵՐ, լեզվապատերազմիների ընտանիքի բազմամյա, կարճ ու հաստ կոճղարմատավոր խոտաբույսերի ցեղ։ Հայտնի է մոտ 150 տեսակ, ՀՀ–ում՝ 2՝ Լոռու, Կոտայքի մարզերում։ Առավել տարածված է արական Վ.։

ՎԱՀԱՆԱՎԱՆՔ, ճարտ. համալիր ՀՀ Սյունիքի մարզում՝ Տիգրանասարի լանջին։ Հիմնադրել է Սյունիքի իշխան Զագիկի որդի Վահանը և կառուցել գլխ.՝ Սբ Գրիգոր Լուսավորիչ գմբեթավոր եկեղեցին (911)։ XI դ–ի կեսին կառուցվել է ուղղանկյուն հատակագծով գավիթը։ Համալիրի հվ. կողմում, մուտքի թաղի վրա բարձրանում է Սյունյաց թագուհու՝ Շահանդուխտի և նրա քրոջ՝ Կատայի կառուցած երկհարկ, թաղածածկ փոքր եկեղեցին։ Մասնակիորեն վերականգնվել է 2006–09–ին։

ՎԱՀԱՆԻԿՆԵՐ, անողնաշարների խիտինային ծածկույթի հաստացած և պնդացած հատվածները։ Եղջրացած թիթեղիկներ են (տեսակափոխված թեփուկներ) սողունների և թռչունների մաշկում։ Մարմինը պաշտպանում են վնասվելուց և չորանալուց։

ՎԱՀԱՆՅԱՆ Ռաֆայել Արտյոմի (ծ. 1951), շախմատիստ։ Միջազգ. գրոսմայստեր (1971)։ ԽՍՀՄ հավաքականի կազմում շախմատի օլիմպիադաների (1984, 1986), աշխարհի (1985, 1989), Եվրոպայի (1980, 1983, 1989) առաջնությունների հաղթող։ ԽՍՀՄ չեմպիոն (1989)։ 1992–ից՝ Գերմանիայում։

ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1–ին աստիճանի մեդալ (2011), Երևանի պատվ. քաղաքացի (2012)։

ՎԱՀԵ ՀԱՅԿ (Տիճցյան Վահե Մկրտչի, 1896–1983), գրող, խմբ.։ ***«Հայաստանի կոչնակ»***, ***«Նոր օր»*** պարբ–ների (ԱՄՆ) խմբագրապետ։ Հեղինակ է «Հայրենի ծխան» (հ. 1–5, 1930–70) երկերի ժող–ի, «Հայաստանի մանկական աշխարհը...» (1974), «Լուսաւոր դեմքեր մեր օրերուն վրայ» (1972) ուսումնասիրությունների ժող–ների, կազմել է «Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը...» (1959) հուշամատյանը։

«ՎԱՀԵ ՍԵԹՅԱՆ», տպարան–հրտչ–յուն, ստեղծվել է 1931–ին Բեյրութում՝ Համազգայինի Նշան Փալանճյան ճեմարանին կից։ Մինչև 1947–ը՝ «Հույս», 1947–67–ին՝ «Համազգային տպարան»։ 1965–ին Համազգ. կենտր. վարչության ատենապետ և ցմահ պատվո նախագահ Վահե Սեթյանի նյութ. հովանավորությամբ տպարանը վերակահավորվել է (1967–ից՝ նրա անվան)։ Հիմնադիր–տնօրեն՝ Նիկոլ Աղբալյան, տնօրեններ՝ Գասպար Իփեկյան, Երվանդ Մոնոֆորյան, Հակոբ Հավաթյան (1998–ից)։

ՎԱՀԵ–ՎԱՀՅԱՆ (Ապդալյան Սարգիս Հակոբի, 1908–1998), բանաստեղծ, խմբ., հաս. գործիչ, մանկավարժ։ 1946–55–ին՝ Բեյրութի ***«Անի»*** ամսագրի հիմնադիր–խմբ., համանուն հրտչ–յան տնօրեն։ Հեղինակ է «Արեւ–անձրև» (1933), «Ոսկի կամուրջ» (1946), «Մատեան սիրոյ եւ մորմոքի» (1968), «Յուշարձան Վահրամիս» (1977), «Ղողանջ ու մրմունջ վերջալուսային» (1990), «Հրաժեշտի երեքուածներ» (հրտ.՝ 2009), «Բանաստեղծին սիրտը» (հրտ.՝ 2012) բանաստեղծությունների, «Բերքահաւաք» (հ. 1, 2, 1978, 1987) գրաքննադատ. հոդվածների ժող–ների, «Յարալէզներու հաշտութիւնը» (1953) ուղեգրության։

ՎԱՀԻԴՈՎ Էրկին (1936–2016), ուզբեկ բանաստեղծ։ Ուզբ. ԽՍՀ ժող. բանաստեղծ (1985)։ Ուզբեկստանի հերոս (1999)։ Հեղինակ է «Արշալույսի շունչը» (1962), «Դիվան երիտասարդության» (1969), «Անմահների ապստամբությունը» (1983), «Լա՛ր իմ, չկտրվես երգելուս պահին» (1986) քնար. բանաստեղծությունների ժող–ների։ Ուզբ. ԽՍՀ Պետ. մրց. (1983)։

ՎԱՀԿԱ, բք Լեռն. Կիլիկիայում՝ Սարոս գետի վերին հոսանքի աջ ափին։ VII–VIII դդ–ում եղել է Բյուզ. կայսրության կարևոր ռազմ. հենակետ։ 1097–ին Կիլիկիայի Հայոց իշխան ***Կոստանդին Ա***–ն բյուզանդացիներից ազատագրել է Վ. և հռչակել իր իշխանապետության մայրաքաղաքը։ 1173–ին Սելեն իշխանության գահանիստը Վ.–ից տեղափոխել է Սիս։ Կիլիկյան Հայաստանի պետականության անկումից (1375) հետո Վ. մնացել է ***Աջապահյանների*** գերդաստանի ձեռքում (մինչև XIX դ.)։ XIX դ–ի վերջին Վ. ավան էր (հայերն անվանում էին Վաքա, թուրքերը՝ Ֆեքե) և համանուն գվոկ–ի կենտրոնը՝ մոտ 800 հայ բնակչությամբ։ Վ.–ի հայերը բռնի տեղահանվել են 1915–ին. նրանց զգալի մասը զոհվել է գաղթի ճանապարհին։

ՎԱՀՐԱԴՅԱՆ Հասմիկ Գուրգենի (ծ. 1954), կենսաքիմիկոս։ Կենսբ. գիտ. դ–ր (2004)։ Բացահայտել է գլխուղեղի ենթատեսաթմբից արտազատված նեյրոպեպտիդի պաշտպ. և կարգավորող դերը՝ Ալցհեյմերի հիվանդության ժամանակ ուղեղի նյարդահորմոն., իմունակարգավորող և ձևաբանաֆունկցիոնալ խանգարումների համար պատասխանատու հանգուցային նյութափոխանակ. մի շարք օղակների վրա։ Ալցհեյմերի հիվանդության հայկ. ընկերակցության փոխնախագահ (2003–ից)։

ՎԱՀՐԱՄ, XIII դ–ի քարգործ վարպետ։ Պահպանվել է նրա մի խաչքարը (1281, ՀՀ Լոռու մարզի Դսեղ գ–ի գերեզմանատունը), որը եզակի է իր հարուստ պատկերաքանդակներով և կառուցվածք. ինքնատիպությամբ։

ՎԱՀՐԱՄ V Գոռ, Վռամ, Բահրամ (ծ. թ. անհտ–439), Իրանի շահ՝ 420/421–ից՝ ***Սասանյանների*** հարստությունից։ 421–422–ին անհաջող պատերազմել է Բյուզանդիայի դեմ։ Հայաստանի պարսկ. մասում թագավոր է նշանակել ***Վռամշապուհի*** որդի Արտաշեսին (տես ***Արտաշես Գ***), սակայն, օգտվելով Հայոց արքայի ու հայ նախարարների գժտությունից, գահընկեց է արել (428) նրան, որով Հայաստանում վերացել է ***Արշակունիների*** տիրապետությունը և հայկ. պետականությունը։

ՎԱՀՐԱՄ ՉՈՒԲԻՆ, Վահրամ Միհրևանդակ, Բահրամ Չուբին (ծ. թ. անհտ–մոտ 592), պարսիկ զորահրամ., Իրանի շահ՝ 590–591–ին։ 589/590–ին Խորասանում պարտության է մատնել Իրան ներխուժած թյուրքերին։ Պատերազմել է Բյուզանդիայի դեմ։ 589/590–ին ապստամբել է Որմիզդ IV–ի դեմ, սպանել նրան, գերել թագաժառանգին (ապագա շահ ***Խոսրով II*** Ափարվեզ), իրեն հռչակել արքայից արքա։ Խոսրովն օգնություն է խնդրել Բյուզանդիայի կայսր Մավրիկիոսից (Մորիկ)։ Զորավար ***Մուշեղ Մամիկոնյանը*** բյուզ. և հայկ. զորքերով ճնշել է Վ. Չ–ի ապստամբությունը։ Վ. Չ. փախել է թյուրք. խաքանի մոտ, սակայն շուտով սպանվել է։

ՎԱՀՐԱՄ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ (ծ. թ. անհտ–1045), ռազմ. և պետ. գործիչ։ ***Պահլավունիների*** իշխան. տոհմից։ Եղել է Հայոց իշխանաց իշխան (980–1020–ական թթ.), Հայոց սպարապետ։ Կառուցել Մարմաշենի գլխ. (988–1029) և Ամբերդի (1026) եկեղեցիները։ Հովհաննես–Սմբատի մահից (1041) հետո մերժել է ***Վեպ Սարգսի*** գահակալ. հավակնությունները և օժանդակել ***Գագիկ Բ***–ի գահ բարձրանալուն։ Հայոց բանակը Վ. Պ–ու գլխավորությամբ Անիի մատույցներում 4 անգամ հետ է մղել այն նվաճել փորձող բյուզ. բանակին։

ՎԱՀՐԱՄ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ, Բահրամ ալ–Արմանի (ծ. թ. անհտ–1140/41), պետ. գործիչ Եգիպտոսում։ ***Գրիգոր Բ Վկայասերի*** քրոջ որդին, ***Ներսես Շնորհալու*** հորեղբայրը։ Հավանաբար XI դ–ի վերջին տեղափոխվել է Եգիպտոս։ 1135–ին նշանակվել է Ստորին Եգիպտոսի Ղարբիյա նահանգ–ի նահանգապետ։ Նույն թվականին նշանակվել է վեզիր, սակայն մահմեդ. մոլեռանդ ավազանու ճնշմամբ հարկադրված հրաժարվել է պաշտոնից (1137)։ Խալիֆը նրան արքունիք է հրավիրել (1139/40) որպես խորհրդական, սակայն վերջինս շուտով սպանվել է։

ՎԱՀՐԱՄ ՐԱԲՈՒՆԻ, **Վահրամ վարդապետ Սևլեռնցի**, XIII դ–ի աստվածաբան, իմաստասեր, պետ. գործիչ: Պաշտպանել է ՀԱԵ և Հռոմի կաթոլիկ եկեղեցու միավորման գաղափարը: Գրել է Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին», Պորփյուրի «Ներածություն», Դավիթ Անհաղթի «Պորփյուրի ներածության վերլուծություն», Գրիգոր Նյուսացու «Մարդու կազմության մասին», Դիոնիսիոս Արիոպագացու «Յաղագս երկնային քահանայապետութեանց» երկերի մեկնությունները: Իմաստասիր–տրամաբ. հարցեր է հետևել է Արիստոտելին և Դավիթ Անհաղթին: Նրա հայացքները մեծապես ազդել են հետագա հայ աստվածաբանների և իմաստասերների, հատկապես՝ Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու աշխարհայացքի ձևավորման վրա:

ՎԱՀՐԱՄՅԱՆ Աշոտ Տիգրանի (1908–1973), ճարտարագետ–քիմիկոս: Տեխ. գիտ. դ–ր (1944), պրոֆ. (1945): ՌԽՖՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1969): Մետաղների էլեկտրանստեցման գիտ–յան հիմնադիրներից: Զվարթ ***Վահրամյանի*** հայրը: Առաջարկել է մետաղների և համաձուլվածքների ստացման էլեկտրաքիմ. եղանակներ, մշակել է լուծույթներից երկաթի ենթախմբի մետաղների նստեցման բարձրջերմաստիճան. եղանակ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950), Աշխ. կարմիր դրոշի շքանշան:

ՎԱՀՐԱՄՅԱՆ Զվարթ Աշոտի (ծ. 1935), նյարդաֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ–ր (2001): Աշոտ ***Վահրամյանի*** դուստրը: Բացահայտել է հետին ենթատեսաթմբի (հիպոթալամուս) նշաձև, ցանցանման գոյացությունների, ծայրամաս. որոշ նյարդերի, նաև գլխուղեղի մարմնազգայական և ասոցիատիվ շրջանների ազդեցությունը լիմբիկ կեղևի նեյրոնների ակտիվության վրա:

ՎԱՀՐԱՄՅԱՆ Հայկազ Սահակի (1907–1981), ճարտարագետ–մեխանիկոս: Տեխ. գիտ. դ–ր (1967), պրոֆ. (1967): Աշխ–ները վերաբերում են մեքենագիտ–յան հարցերին:

ՎԱՀՐԱՄՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, ավատատիր. կազմավորում: Ձևավորվել է 1190–ական թթ.–XIII դ–ի սկզբին: Ընդգրկել է Ջորոփոր, Տավուշ, Փառիսոս և Դարդման գավ–ները (սահմանները ձգվել են Գագից մինչև Շամքոր, Կուրից՝ Սևանա լ–ներ): Իշխանանիստը Գագ ամրոցն էր, հոգևոր կենտրոնը՝ ***Նոր Վարագա վանքը***: Վահրամյանները պատկանել են ***Զաքարյանների*** կրտսեր ճյուղին: Տոհմի նախահայրը Սարգիս Զաքարյանի եղբայր Վահրամն է (վախճանվել է նախքան 1176–ը): Վ. ի–յան մասին վերջին տեղեկությունը թվագրվում է 1284–ով:

ՎԱՀՈՒՆԻ Արա Սուրենի (1938–2006), կինոռեժ.: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1982): Սուրեն ***Վահունու*** որդին: 1969–ից՝ Հայաստանի վավերագր. ֆիլմերի ստուդիայի (այժմ՝ «Հայկ») ռեժ. («Վարագույրը չի իջնում», 1973, «Կանչ», 1978, «Ղարաբաղյան շարժում», 1990, «Հավատ, հույս, սեր», 1991, «Ջորավարը», 1998, «Խաչ և սուր», 2001, վավերագր., ևն, «Ծերունին և քամին», 1981, «Անուշ մայրիկը», 1983, գեղ.): ՀՀ Պետ. (1977), 11–րդ համամիութ. կփ գլխ. (1978, Երևան), «Ոսկե ծիրան» կփ հատուկ (2006, Երևան) մրց–ներ:

ՎԱՀՈՒՆԻ (Խաչիկյան) Սուրեն Վահանի (1910–1983), բանաստեղծ, թարգմանիչ: ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1967): 1963–83–ին՝ Ա. Իսահակյանի տուն–թանգարանի տնօրեն: Արա ***Վահունու*** հայրը: Հեղինակ է «Երկու երգ» (1930), «Ռազմի երգեր» (1938), «Դեպի արևմուտք» (1943), «Երգերի գիրք» (1949) բանաստեղծությունների ու բալլադների ժող–ների: Թարգմանել է Ա. Ս. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» (1937), Լոպե դե Վեգայի «Պարտիզպանի շունը» (1956), Ջ. Բոկաչչոյի «Դեկամերոնը» (1960), Ա. Դյումայի «Կոմս Մոնտե Քրիստոն» (1966), Յ. Հաշեկի «Քաջարի զինվոր Շվեյկի արկածները...» (1973) և այլ գործեր:

ՎԱՂԱՀԱՄՈՒԹՅՈՒՆ, բույսերի և կենդանիների արագ աճելու և զարգանալու ունակությունը: Կենդանիներինը որոշվում է հասունության (սեռ., տնտ. ևն) արագությամբ, բույսերինը՝ հասածությամբ (կենսբ., տնտ. ևն):

ՎԱՂԱՐՇ (ծ. թ. անհտ–488), Իրանի շահ՝ 484–ից՝ ***Սասանյանների*** հարստությունից: Հաջորդել է հորը՝ ***Պերոզին***: Հայաստանի պարսկ. մասում Վ. հարկադրված փոխել է Սասանյանների քաղ–յունը, ընդունել Հայաստանում բռնկած համաժող. ապստամբության ղեկ. ***Վահան Մամիկոնյանի*** պայմաններն ու հաշտությունն կնքել (տես ***Նվարսակի պայմանագիր 484***):

ՎԱՂԱՐՇ I (ծ. թ. անհտ–մոտ 80), պարթևաց արքա՝ 51–ից: Պայքարել է Արևելքում հռոմ. ազդեցության դեմ: Եղբորը՝ Տրդատին (***Տրդատ Ա***), բազմեցրել է Հայոց գահին, որը առիթ է դարձել նոր պատերազմի՝ մի կողմից՝ Հռոմի, մյուս կողմից՝ Պարթևական թագավորության ու Հայաստանի միջև (54–64): Ավարտվել է Հռանդեայի հաշտությամբ (տես ***Հռանդեայի պայմանագիր 64***): Տիգրոնի և Բաբելոնի մոտ իր անունով հիմնադրել է քաղաքներ:

ՎԱՂԱՐՇ Ա, Հայոց արքա՝ 116–144–ին՝ Արշակունիների արքայատոհմից: ***Սանապրուկի*** որդին: 116–ին գլխավորելով հռոմ. նվաճողների դեմ հայերի ազատագր. պայքարը՝ վերականգնել է երկրի անկախությունը և պարթևների արքա Խոսրովի աջակցությամբ հռչակվել Մեծ Հայքի թագավոր: Վերակառուցել է տվել Վարդգեսավանը, որը նրա անունով վերանվանվել է Վաղարշապատ, Բասենում հիմնադրել է Վաղարշավանը, Բագրևանդում՝ Վաղարշակերտը (Ալաշկերտ): 144–ին Հռոմի կայսր Անտոնինոս Պիոսը Վ. Ա–ին գահընկեց է արել՝ Մեծ Հայքի թագավոր կարգելով ***Սոհեմոսին***:

ՎԱՂԱՐՇ Բ (ծ. թ. անհտ–մոտ 198), Հայոց արքա՝ 186–ից՝ Արշակունիների արքայատոհմից: Հռոմի դրածո ***Սոհեմոսի*** մահից (186) հետո Հայաստանից վտարել է հռոմ. կայազորը և իրեն հռչակել Մեծ Հայքի թագավոր: Վ. Բ–ի վարած խոհեմ քաղ–յան շնորհիվ ամրապնդվել է Հայոց թագավորությունը: Զոհվել է կովկասյան լեռնականների դեմ պայքարում:

ՎԱՂԱՐՇԱԿ, Հայոց ավանդ. արքա՝ մ. թ. ա. II դ–ում: Ըստ հայ պատմագիրների՝ պարթև Արշակունի արքա Միհրդատ I–ի (Արշակ Մեծ, մ. թ. ա. 171–138/137) եղբայրը և հայ Արշակունիների արքայատոհմի հիմնադիրը: Գահակալել է 31 տարի: Իրականացրել է վարչ., քաղ., ռազմ., տնտ. և մշակութ. բարենորոգումներ: Ուսումնասիրողները նույնացնում են ***Տրդատ Ա***–ի կամ ***Վաղարշ Բ***–ի հետ:

ՎԱՂԱՐՇԱԿԵՐՏ, **Վալարշակերտ**, տես ***Ալաշկերտ***:

ՎԱՂԱՐՇԱԿՅԱՆ Աշոտ Աղասու (ծ. 1949), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1985): Աշխ–ները վերաբերում են մաթ. անալիզին, ինտեգրալ և դիֆերենցիալ հավասարումներին, ազդանշանների տեսությանը:

ՎԱՂԱՐՇԱԿՈՒՊՈԼԻՍ, **Աբառնե, Ավառնե, Զերմուկ**, հնագույն ք. Ծոփաց աշխարհում: Խեթ. արձանագրություններում հիշատակվում է «Ավառնա» անվանաձևով: Հայտնի է եղել իր բուժիչ և տաք ջրերով: Վ. է կոչվել IV դ–ի վերջից, երբ Բյուզանդիայի կայսր Թեոդոսիոս I–ը (379–395) այն շնորհել է Հայոց թագավոր Պապի որդուն՝ Վաղարշակին:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ (1945–95–ին՝ Էջմիածին), ք. (1965–ից) ՀՀ Արմավիրի մարզում՝ Երևանից 20 ***կմ*** արմ.: Բն.՝ 57,8 հզ. (2012): Կան գինու, պահածոների, սարքաշին. արտադր–յան ձեռն–ներ:

Հիմնադրվել է մ. թ. ա. VI դ–ում. Հայոց Երվանդ Ա. Սակավակյաց թագավորի փեսա Վարդգես Մանուկը Վ–ի տեղում կառուցել է Վարդգեսավանը: Հայոց ***Վաղարշ Ա*** թագավորը վերակառուցել է այն, պարսպապատել և իր անունով վերանվանել է Վ–ի ու դարձրել 2–րդ գահանիստը: IV դ–ի սկզբից եղել է (ընդհատումներով) Ամենայն հայոց կաթողիկոսի աթոռանիստը: 301–302–ին այստեղ կառուցվել է Կաթողիկե եկեղեցին՝ Հայաստանի առաջին քրիստ. Սայր տաճարը, V դ–ի սկզբին՝ դպրոց, 1771–ին՝ տպարան (առաջինը՝ Արլ. Հայաստանում): 1441–ի մայիսից Հայոց կաթողիկոսությունը վերահաստատվել է Վ.–ում:

Վ.–ում է Սայր աթոռ Սբ Էջմիածինը՝ համայն հայության հոգևոր կենտրոնը, որը Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԴՊՐՈՑ, **վարդապետարան**, հայալեզու առաջին դպրոցը, որ հիմնադրվել է հայ գրերի գյուտից հետո: Դասավանդել են ***Մեսրոպ Մաշտոցը*** և ***Սահակ Ա. Պարթևը***: Ուսուցանել են Սուրբ գիրքը, վարքաբանություն, եռակ գիտ–յուններ (քերակ., ճարտասանություն, դիալեկտիկա) և այլ առարկաներ (հունս. բարձրագույն դպրոցի օրինակով): Պատրաստել է ուսուցիչներ, քարոզիչներ և եկեղեց. գործիչներ: Գործել է մինչև 510–ը: Վերաբացվել է 1441–ին: 1874–ին նրա հիմքի վրա ստեղծվել է ***Գևորգյան ճեմարանը***:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԹԱՏՐՈՆ, 1868–ին Վաղարշակ ***Շահխաթունյանի*** նախաձեռնությամբ Վաղարշապատում կազմակերպվել են առաջին ներկայացումները (նաև Գևորգյան ճեմարանում): 1907–ին բացվել է Ճեմարանի թատրոնը (Կոմիտասի «Քաղաքավարության վնասները» օպերետը ևն): 1937–ին հիմնադրվել է պետ. թատրոն (ղեկ.՝ Ա. Խոսրով). խաղացանկում՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», Կ. Սիմոնովի «Ռուս մարդիկ» և այլ գործեր: 1949–ին միավորվել է Ա. Խարազյանի թատրոնի հետ, անվանվել Էջմիածնի Ա. Խարազյանի անվ. պետ. թատրոն: 1952–ից գործել է որպես ինքնագործ թատերախումբ (1959–ից՝ Էջմիածնի ժող. թատրոն, 1990–ից՝ Էջմիածնի դրամատիկ. թատրոն, 1995–ից՝ Վաղարշապատի Շ. Ազնավուրի անվ. դրամատիկ. թատրոն):

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԺՈՂՈՎՆԵՐ, գումարվել են IV–V դդ–ում Վաղարշապատ ք–ում դավանաբան. և քաղ. կարևոր խնդիրների քննարկման համար (տեղի

է ունեցել 5 ժողով)։ Ըստ ***Մովսես Խորենացու***՝ **առաջին** ժողովը 325-ին հրավիրել է ***Գրիգոր Ա Լուսավորիչը***, որդու՝ ***Արիստակես Ա-ի՝ Նիկիայի տիեզերական ժողովից*** (***325***) վերադառնալուց հետո։ Ժողովն ընդունել է Նիկիայի սահմանած Հավատո հանգանակը, կանոնները՝ Գրիգոր Ա Լուսավորչի հավելումներով։ **Երկրորդ** ժողովը, որի մասին վկայում է միայն ***Հովհաննես Ե Դրասխանակերտցին*** (X դ.), գումարվել է 366-ին՝ Հայոց թագավոր ***Արշակ Բ***-ի նախաձեռնությամբ և ***Ներսես Ա Մեծ*** կաթողիկոսի նախագահությամբ։ Ժողովը Հայոց կաթողիկոսությունն անկախ է ճանաչել Կեսարիայի եպիսկոպոսապետությունից (այդուհետև Հայոց կաթողիկոսը պետք է ձեռնադրվեր տեղում)։ **Երրորդ** ժողովը, որը գումարվել է 402/403-ին Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Ա Պարթևի նախաձեռնությամբ, վճռել է Հայաստանում օգտագործվող հուն., ասոր., պարսկ. դպրությունները փոխարինել հայկ-ով, և այդ նպատակով արքունի դիվանապետ Վահրիճ Խադունուն ուղարկել Եղեսիա՝ բերելու դանիելյան նշանագրերը։ **Չորրորդ** ժողովը (426) նույնպես հրավիրել են Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Ա Պարթևը՝ քննելու և հաստատելու Հայոց եկեղեցու հայ. նոր գրով կազմված կանոնները։ Հաստատվել է Սահակ Ա Պարթևի կազմած «Թուղթ ընդհանրականը», որտեղ սահմանված էին եպս-ների, քհն-ների և վանականների պարտականությունները։ **Հինգերորդ** ժողովը (491), որին մասնակցել են նաև Աղվանից և Վրաց եկեղեցիների եպս-ներ, Հայոց կաթողիկոս ***Բարկեն Ա Որմեցու*** գլխավորությամբ քննել է բյուզ. Զենոն կայսեր «Հենոտիկոն»-ը (երկաբնակ և միաբնակ եկեղեցիները հաշտեցնելու, միավորելու փորձ), դատապարտել ***նեստորականությունը*** և ***քաղկեդոնականությունը***։ Վ. ժ. հիմք են դրել Հայոց եկեղեցու ինքնուրույնությանը, որն ամրապնդվել է ***Դվինի եկեղեցական ժողովներում***։

ՎԱՂԱՐՇԱՎԱՆ, Բասենո բերդ, Բասեն, ք. Այրարատ նահ-ի Բասեն գավ-ում՝ Երասխ և Սուրց գետերի միախառնման վայրում։ Հիմնադրել է Հայոց թագավոր ***Վաղարշ Բ***-ն (II դ.)։ 1048–49-ին ավերվել է սելջուկ-թուրքերի արշավանքներից։ Ավերակները նշմարվում են ներկայի Քյոփրիքյոյ գ-ի մոտ։

ՎԱՂԱՐՇՅԱՆ Արթուր Գրիշայի (ծ. 1963), իրավաբան։ Իրավաբ. գիտ. դ-ր (2005), պրոֆ. (2005)։ Աշխ-ները վերաբերում են պետության և իրավունքի, կրթության իրավ. կարգավորման հարցերին։

ՎԱՂԱՐՇՅԱՆ Լաերտ Վաղարշակի (1922–2000), կինոռեժ., կինոսցենարիստ։ ՀՀ ժող. արտիստ (1976)։ Վաղարշ ***Վաղարշյանի*** որդին։ 1941-ից՝ Հայֆիլմի ռեժ. (1967–69-ին՝ տնօրեն)։ Նկարահանել է «Առաջին սիրո երգը» (1958, Յուրի ***Երզնկյանի*** հետ), «Քաոս» (ըստ Շիրվանզադեի, 1973, համամիութ. կփ մրց., Բաքու), «001 աքսորականը» (1978) գեղ., «Մարտիրոս Սարյան» (1965), «Արամ Խաչատրյան։ Արվեստագետը, քաղաքացին» (1981–83, 4 մաս, համամիութ. կփ Մեծ մրց., Կիև) վավերագր. և այլ ֆիլմեր։

ՎԱՂԱՐՇՅԱՆ Վաղարշ Բոգդանի (Տեր-Պողոսյան Վաղարշակ Բախշիի, 1894–1959), դերասան, ռեժ., հաս. գործիչ։ ՀԽՍՀ (1938), ԽՍՀՄ (1954) ժող. արտիստ։ Լաերտ ***Վաղարշյանի*** հայրը։ 1923-ից՝ Երևանի Սունդուկյանի անվ. պետթատրոնի դերասան (1941–44-ին՝ գեղ. ղեկ.)։ Վարպետորեն է կերտել հայ., ռուս. և եվրոպ. դաս. խաղացանկերի դերերը (Խլեստակով՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», Դոն Գուան՝ Ա. Ս. Պուշկինի «Քարե Հյուր», Եգոր Բուլըչով՝ Մ. Գորկու «Եգոր Բուլըչովը և ուրիշները», Սուրեն՝ Շիրվանզադեի «Պատվի համար», Համլետ՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», ևն։)։ Բեմադրել է Մ. Գորկու «Դոստիգաևը և ուրիշները» (1934), «Վասսա Ժելեզնովա» (1937) և այլ պիեսներ։ Հեղինակ է «Օղակում» (1930), «Վանքաձոր» (1945) և այլ պիեսների։ Նկարահանվել է կինոյում («Լեռնային արշավ», 1939, «Առաջին սիրո երգը», 1958, երկուսն էլ՝ Հայֆիլմ, ևն)։ ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1952)։

ՎԱՂԵՆԱԿ, աստղածաղկազգիների ընտանիքի խոտաբույսերի կամ կիսաթփերի ցեղ։ Հայտնի է մոտ 30 տեսակ, ՀՀ-ում՝ 1 (պարսկ. Վ.)՝ Սյունիքի մարզում։ Աճում է չոր, քարքարոտ, խճոտ լանջերին, երբեմն՝ որպես մոլախոտ։ Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում։ Դեղաբույս է։

ՎԱՂԵՍ (Flavius Valens, 328–378), Արևելահռոմ. կայսրության կայսր՝ 364-ից։ 366-ին ճնշել է զորավար Պրոկոպիոսի ապստամբությունը։ Խախտելով Սասանյան Իրանի հետ 363-ի հաշտության պայմանագիրը՝ 370-ին Հայաստանի թագավոր է հաստատել ***Պապին***, Վրաստանի հվ. և արմ. շրջանների թագավոր՝ Սուրմակին, իսկ հս. և արլ. շրջանների թագավոր՝ Վարազ-Բակուրին։ Երբ Պապը փորձել է կարգավորել իր հարաբերությունները Իրանի հետ, Վ.-ի հրամանով ***Տրայանոս*** զորավարը 374-ին դավադրաբար սպանել է նրան և Հայոց թագավոր նշանակել ***Վարազդատին*** (374–378)։ 375 և 376-ին պարսից Շապուհ II արքայի հետ բանակցություններ է վարել Հայաստանի բաժանման շուրջ։

ՎԱՂԸ, երկար շեղբով կացնաձև զենքի տեսակ։ Կրել են ազդրի վրա։ Միջնադար. Հայաստանում եղել են վաղրավորների զորամասեր։ Մովսես Խորենացու վկայությամբ՝ Վ.-ով է սպանվել Հայոց Երվանդ վերջին թագավորը։

ՎԱՂՈՒՀԱՍԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԱԽՈՒՄԲ, ճարտ. համալիր ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վաղուհաս գ-ում։ Գյուղի կենտրոնի «Մայրաքաղաք» համալիրը բաղկացած է եկեղեցուց (1283), մատուռից, գավիթ-գրատնից (XIII դ.)։ Շրջակայքում են Հին Վաղուհաս գյուղատեղին՝ ավերակ եկեղեցով, Վարդունի գյուղատեղին՝ եկեղեցով (1215) և գավթով։ Արմ. կողմում կանգուն է Բերդաձորի Սբ Գրիգոր (Կարմիր) վանքը՝ միանավ եկեղեցով (1224) և թաղածածկ գավթով (XIII դ.)։

«ՎԱՃԱՌԱԿԱՆ», առևտր. շաբաթաթերթ (1866–67, Թիֆլիս)։ Խմբ.՝ Գևորգ Տեր-Աղեքսանդրյան։

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, 1. սոցիալ. խավ, որը ձեռնարկատիրությամբ է զբաղվել գլխավորապես առևտրի ոլորտում։ Առաջացել է Արևելքի և Արևմուտքի հին պետություններում։ XI–XII դդ.-ում զարգացել է Արմ. Եվրոպայում (հատկապես՝ Վենետիկում, Ջենովայում, Հանզայի ք-ներում)։ 2. 1775-ին օրենսդրորեն ձևավորված քաղաք. առևտրաարդ. դաս Ռուսաստանում։

Հայաստանը հնագույն ժամանակներից եղել է տարանցիկ առևտրի կարևոր կենտրոն, գետերով հաղորդակցվել Կասպից, Սև և Միջերկր. ծովերին։ Հայ Վ. կատարել է միջնորդի դեր Արևմուտքի և Արևելքի միջև տարանցիկ առևտրում։ Միջերկրածովյան առևտրին աշխույժ մասնակցել է Կիլիկիայի հայ Վ.։ Վ. մեծ դեր է ունեցել հայկ. գաղթավայրերում (Ռուսաստան, Հնդկաստան, Ֆրանսիա, Իրան, Հոլանդիա, Իտալիա, Ամերիկա և այլուր), օգտվել որոշակի արտոնություններից։

ՎԱՄՊԻՐ (ֆրանս.՝ vampire, գերմ.՝ Vampir), արյունախում և մղձավանջ հարուցող ննջեցյալ ոգի եվրոպ. մի շարք ժողդ-ների հավատալիքներում։ Իբր գիշերները ելնում է գերեզմանից և չղջիկի կերպարանքով ծծում քնած մարդկանց արյունը։ Փխբ. իմաստով՝ դաժան, արյունախում, շահագործող մարդ։

ՎԱՄՊԻՐՆԵՐ, չղջիկների ընտանիք։ Մարմնի երկ.՝ 6,5–9 *սմ*։ Հայտնի է 4 տեսակ՝ Ամերիկայի արևադարձ. և մերձարևադարձ. շրջաններում։ Սնվում են միայն կաթնասունների և թռչունների թարմ արյունով։ Վ. են կոչվում նաև չղջիկների այլ ընտանիքների որոշ տեսակներ (օր.՝ ***կեղծ վամպիրները***)։

ՎԱՅԱՆ–ԿՈՒԻՏՅՈՒՐԻԵ (Vaillant–Couturier) Պոլ (1892–1937), ֆրանսիացի գրող, ֆրանսիայի կոմկուսի հիմնադիրներից։ 1926–37-ին՝ «***Յումանիտե***»-ի գլխ. խմբ.։ Հեղինակ է «Կույրերի պարահանդես» (1927) պատմվածքների ժող-ի, ինքնակենսագր. «Մանկություն» (հրտ.՝ 1938), մշակութ. խնդիրներին նվիրված «Բանականությանը ծառայելով» (1937) գրքերի։

ՎԱՅԳԱՉ, կղզի Բարենցի և Կարայի ծովերի սահմանին (ՌԴ)։ Տարածքը՝ 3,4 հզ. *կմ*², բն.՝ 106 (2012)։ Բարձր.՝ մինչև 170 *մ*։ Գործում է բևեռ. կայան (1950-ից)։

ՎԱՅԳԵԼ, **Վեյգել** (Weigel), Ելենա (1900–1971), գերմանացի դերասանուհի։ Բ. ***Բրեխտի*** կինը։ Միասին հիմնադրել են «Բեռլիներ անսամբլ» թատրոնը, խաղացել նույն թատրոնում (Կուրաժ մայրիկ՝ Բ. Բրեխտի «Կուրաժ մայրիկը և նրա երեխաները», ևն)։ ԳԴեմՀ արվ-ի ակադ-ի հիմնադիր-անդամ։

ՎԱՅԴԱ (Wajda) Անջեյ (1926–2016), լեհ ռեժ.։ Նկարահանել է «Ջրանցք» (1957), «Մոխիր և ալմաստ» (1958), «Մոխիր» (1965), «Կեչուտ» (1971), «Մարմարե մարդը» (1976), «Երկաթե մարդը» (1981), «Դանտոն» (1983), «Չարչարանաց շաբաթ» (1995), «Կատին» (2007), «Վալենսա. հույսի մարդը» (2013) և այլ ֆիլմեր, որոնք Լեհաստանի զարգացման պատմ. ուղիների, անհատի և հաս-յան միջև ողբերգ. բախումների մասին են։ «Օսկար» մրց. (2000)։

ՎԱՅԵՐՇՏՐԱՍՍ (Weierstrass) Կառլ Թեոդոր Վիլհելմ (1815–1897), գերմանացի մաթեմատիկոս։ Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1864), ապա՝ պատվ. անդամ (1895)։ Աշխ-ները վերաբերում են մաթ. անալիզին, ֆունկցիայի տեսությանը, վարիացիոն հաշվին, դիֆերենցիալ երկրչփ-յանը և գծային հանրահաշվին։ Աշակել է մաթ. անալիզի տրամաբ. հիմնավորման համակարգ։

ՎԱՅԿՈՒՆԻՔ, գվթ Արցախ նահգ-ում։ Ընդգրկել է Տրտու (Թարթառ) գետի վերին ավազանը։ Հայտնի է եղել իր ջերմուկներով, որոնք այնտեղ կառուցված արքուն. բաղնիքի համար կոչվել են «Բաղանիք արքունականք» (այժմ՝ Ջերմաջուր, ԼՂՀ Շահումյանի շրջանում)։ Իշխանանիստ

կենտրոնի անունով XI–XII դդ–ում կոչվել է *Ծարի գավառ*:

ՎԱՅՄԱՐՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, Գերմանիայում, հռչակվել է 1918–ի Նոյեմբ. հեղ–յան արդյունքում: Իրավաբանորեն ձևակերպվել է 1919–ի Վայմարյան սահմանադրությամբ: 1933–ին՝ Գերմանիայում ֆաշիստ. բռնատիրության հաստատումից հետո, Վ. Հ. դադարել է գոյություն ունենալուց:

ՎԱՅՆԲԵՐԳ (Weinberg) Սթիվեն (ծ. 1933), ամերիկացի ֆիզիկոս: Աշխ–ները վերաբերում են դաշտի քվանտ. տեսությանը, տարր. մասնիկների ֆիզիկային, հարաբերականության տեսությանը, աստղաֆիզիկային: Մասնակցել է էլեկտրամագնիս. և թույլ փոխազդեցությունների տրամաչափման միասն. տեսության ստեղծմանը: Նոբելյան մրց. (1979, Շ. *Գլեշոուի* և Ա. *Սալամի* հետ):

ՎԱՅՆԵՐՆԵՐ, ռուս գրող եղբայրներ, **Արկադի Ալեքսանդրովիչ Վ.** (1931–2005) և **Գեորգի Ալեքսանդրովիչ Վ.** (1938–2009): Համահեղինակ են «Այց Մինոտավրոսին» (գիրք 1–2, 1971–72), «Ուղղահայաց մրցավազքեր» (1974), «Գթասրտության դարաշրջան» (1976, կինոնկար՝ «Հանդիպման վայրը փոխել չի կարելի», 1979), «Կոլումբոսի կտակը» (1987), «Դահճի ավետարանը» (1993) դեդեկտիվ վեպերի:

ՎԱՅՆՇՏԵՅՆ Լև Ալբերտովիչ (1920–1989), ռուս. ռադիոֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1966): Աշխ–ները վերաբերում են ալիքների դիֆրակցիային և տարածմանը, էլեկտրոնիկային, վիճակագր. ֆիզիկային:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1990, հետմահու):

ՎԱՅՇԵՇԻԿԱ (սանսկրիտ՝ վիշեշա – առանձնահատկություն, տարբերություն), հինհնդ. փիլ–յան 6 ուղղափառ համակարգերից: Ըստ ավանդության՝ հիմնադիրը Քանադան է, որին էլ վերագրվում է Վ–ի հիմն. երկը՝ «Վայշեշիկա–սուտրա»–ն (վերջն. խմբագրությունը՝ մ. թ. I դ–ից ոչ ուշ): Մոտ է *Նյայային*, որի հետ հետագայում կազմել է միասն. դպրոց: Ըստ Վ–ի ատոմիստ. ուսմունքի՝ ֆիզ. օբյեկտները բաղկացած են ատոմներից, որոնք այդ օբյեկտների մասնատման սահմանն են:

ՎԱՅՈՄԻՆԳ (Wyoming), նահց ԱՄՆ–ի արմ–ում: Տարածքը՝ 253 հզ. *կմ*^{2}, բն.՝ 585,5 հզ. (2016): Վարչ. կենտրոնը՝ Շայեն:

ՎԱՅՈՑ ՁՈՐ, **Եղեգյաց ձոր, Վարդաձոր**, գվթ Սյունիք նահց–ում՝ Արփա գետի ավազանում: Հվ–ից սահմանակցել է Սյունիքի Ճահուկ, Նախճավան և Այրարատի Շաբուռ, արմ–ից՝ Այրարատի Արագ, Ուրծաձոր, հս–ից՝ Սյունիքի Գեղարքունիք և Սոդք, արլ–ից՝ Արցախի Վայկունիք և Սյունիքի Ծղուկք գվթ–ներին: Մ. թ. ա. VI դ–ում մտել է Երվանդունիների, մ. թ. ա. 189–ին՝ Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորության մեջ, Մեծ Հայքի թագավորության՝ ըստ «աշխարհների» վարչ. բաժանումից հետո (I դ.)՝ Սյունիքի մեջ: 571–ին Սյունիքի հետ միացվել է Փայտակարան նահգ–ին: Արաբ. տիրապետության ժամանակաշրջանում Վ. ձ. մտել է Արմինիայի կազմի մեջ: 987–ին Վ. ձ. մտել է նորաստեղծ *Սյունիքի թագավորության* մեջ: XII դ–ի վերջին և XIII դ–ի սկզբին ազատագրել են հայ–վրաց. զորքերը և մտցրել *Զաքարյանների իշխանապետության* մեջ (պատկանել է *Խաղբակյաններին* և *Օրբելյաններին*): XIII դ–ի վերջին և XIV դ–ի 1–ին տանանամյակներին մեծ հռչակ է ձեռք բերել Գլաձորի համալսարանը, XIV դ–ից մինչև XV դ–ի 1–ին կեսը գործել է Հերմոնի վանքի դպրոցը: 1555–ի Ամասիայի պայմանագրով Վ. ձ. անցել է Սեֆյան Իրանին: XVIII դ–ի կեսին մտել է նոր կազմված Նախիջևանի խանության մեջ: 1828–ի Թուրքմենչայի պայմանագրով միացվել է Ռուս. կայսրությանը: 1918–ից՝ ՀՀ կազմի մեջ:

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, վտմ ՀՀ–ում: Կազմավորվել է 1995–ին, ներառում է Եղեգնաձորի և Ազիզբեկովի նախկին վարչ. շրջանների տարածքները: Տարածքը՝ 2308 *կմ*^{2}, բն.՝ 52,3 հզ. (2011): Մարզկենտրոնը՝ Եղեգնաձոր: Սահմանակից է Արարատի, Գեղարքունիքի, Սյունիքի մարզերին, ԼՂՀ–ին և Նախիջևանի ԻՀ–ին: Մարզի կենտրոնով ձգվում է Երևան–Արտաշատ–Եղեգնաձոր–Վայք–Մեղրի–Իրան միջպետ. նշանակության մայրուղին: Տնտ–յան գերակշռող ճյուղը գղտ–յունն է (խոշոր եղջերավոր, բրդատու ոչխարաբուծություն, այծաբուծություն, մեղվաբուծություն, թռչնաբուծություն, խաղողագործություն, պտղաբուծություն): Պատմաճարտ. հուշարձաններից նշանավոր են Թանադեի վանքը, Սբ Սիոնի մենաստանը (երկուսն էլ՝ VIII դ.), Նորավանքը (IX–XIV դդ.), Ցաղաց քարի, Արատեսի, Շատինի, Խոտակերաց, Մարտիրոսի Սբ Աստվածածին վանքերը, Գնդեվանքը (բոլորը՝ X–XIII դդ.), Եղեգիսի Սբ Նշան եկեղեցին, Գումուրի խաչքարմատուռը (երկուսն էլ՝ XIII դ.), Սբ Զորաց (1303), Արենիի Սբ Աստվածածին (1321) եկեղեցիները, Կարմրաշենի խաչքարերը (X–XVI դդ.) ևն: Արենիի թռչունների քարանձավում 2008–ին հայտնաբերվել է 5500 տարվա վաղեմության կոշիկ և գինու 6000–ամյա արտադրամաս:

ՎԱՅՈՑՄԱՐ, **Ձագար**, հանգած հրաբուխ ՀՀ Վայոց ձորի մարզում՝ Կարմրաշեն գ–ից հվ–արմ.: Բարձր.՝ 2586 *մ*: Առաջացել է անթրոպոգենում, ունի հատած կոնի ձև, մոտ 125 *մ* խոր–յան ձագարաձև խառնարան: Կազմված է խարամներից:

ՎԱՅՉԿՈՒՍ Յուոզաս Իոնասովիչ (1885–1935), լիտվացի թատեր. գործիչ: 1916–ին հիմնադրել է լիտվ. դրամատիկ. ստուդիա, որը դարձել է լիտվ. առաջին պրոֆեսիոնալ թատրոնը (1918–ից գործել է Վիլնյուսում, 1919–ից՝ Կաունասում), որի հիման վրա 1920–ին ստեղծվել է «Արվեստի արուրիչների» ընկ–յան դրամատիկ. թատրոնը (1922–ից՝ պետ. թատրոն, ռեժ.՝ Վ.):

ՎԱՅՍ (Weiss) Պետեր (1916–1982), գերմանացի գրող: Հեղինակ է «Ժան–Պոլ Մարատի հետապնդումն ու սպանությունը. Շարանտոնի հոգեբուժարանի արտիստական խմբի ներկայացումը մարկիզ դը Սադի ղեկավարությամբ» (1964) և այլ դրամաների, հակաֆաշիստ. թեմայով «Հետաքննություն» (1965) վավերագր. պիես–օրատորիայի, նաև վեպերի:

ՎԱՅՍԿՈՊՖ (Weisskopf) Ֆրանց Կառլ (1900–1955), գերմանացի գրող: 1938–45–ին՝ վտարանդի, ապա՝ Չեխոսլովակիայի դեսպան տարբեր երկրներում, 1953–ից՝ ԳԴ�եմՀ–ում: Հեղինակ է հակաֆաշիստ. թեմաներով վեպերի («Գայթակղություն», 1937, ևն), ավստրո–հունգ. միապետության անկման մասին «Իր ժամանակի երեխաները» (1950–ական թթ.) վիպաշարի ևն:

ՎԱՅՏԵՆԲԵՐԳ (Weitenberg) Յոզեֆ Յոհաննես (Յոս, 1943–2012), հոլանդացի հայագետ, խեթագետ, լեզվաբան: Բանասիր. գիտ. դ–ր (1984): Ուսումնասիրել է հնդեվրոպ. համեմատ. լեզվաբ–յան, հիթիթաբանության և հայերենագիտ–յան, հայոց լեզվի պատմության և այլ խնդիրներ: Հեղինակ է «Հայերենի «ընդոծինը»» (1980), «Ակնարկներ դասական հայերենի դերանվանական տրականի շուրջ» (1983), «Եղիա Չելեպին սերաստահայ խոսվածքի մասին» (1984), «Հիթիթերենի U–արմատը» (1984) աշխ–ների:

ՎԱՅՐԱԴՅԱՆ Հակոբ Սիմոնի (1930–1991), հաշվող. տեխնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1973), պրոֆ. (1975): Աշխ–ները վերաբերում են հաշվող. սարքերի ու համակարգերի հուսալիության բարձրացման, դրանց նախագծման, ավտոմատացման խնդիրներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1991):

ՎԱՅՐԵՆՈՒԹՅՈՒՆ, մարդկության պատմ. վաղ փուլի (նախորդել է ***բարբարոսությանն*** ու ***քաղաքակրթությանը***) անվանումը XVIII դ–ի եվրոպ. գիտ. գրկ–յան մեջ: Այս իմաստով «Վ.» առաջին անգամ գործածվել է 1767–ին: Արդի ազգագրության մեջ ընդունված պարբերացմամբ՝ Վ. համընկնում է մարդու ու վաղ տոհմատիր. կարգերի առաջացման ժամանակաշրջանին (պալեոլիթ, մեզոլիթ): Սովորական խոսակցության մեջ՝ ծայրահեղ անկուլտուրականություն:

ՎԱՅՐԷՋՔԱԳԻԾ, **գլիսադ** (ֆրանս.՝ glissade – բառացի՝ սահում), ինքնաթիռի, ուղղաթիռի, ճախրաթիռի թռիչքի, վայրէջքի հետագիծը:

ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (WNWF), միջազգ. ոչ կառավար. կազմ–յուն, հիմնադրվել է 1961–ին: Նպատակը՝ բնական միջավայրի վատթարացման կանխարգելում, բնության պահպանության և բուս. ու կենդ. աշխարհների անհետացող տեսակների փրկության համար ֆին. միջոցների հայթայթում ևն: Իրականացնում է գենետիկ., տեսակ. և էկոհամակարգ. բազմազանության պահպանում, նպաստում էներգիայի ու պաշարների արդյունավետ օգտագործմանը, մշակում բնապահպան. հիմնախնդիրների լուծման ռազմավարություն: Նստավայրը՝ Գլանդում (Շվեյցարիա):

ՎԱՅՐԻ ԿԱՏՈՒ, ***կապտուներ*** սեռի կաթնասուն կենդանի: Ապրում է Եվրասիայում, Աֆրիկայում: Նախկինում տարբերել են 2 տեսակ՝ անտառ. կամ եվրոպ. և տափաստան. կատուներ: Հյուսիսաֆրիկ. ենթատեսակը՝ լիբիական կատուն, ընտանի կատուների նախահայրն է: Միջինեվրոպ. Վ. կ. պահպանվում է:

ՎԱՅՐԻ ԿՈՐԵԿ, դաշտավլուկազգիների (հացազգիներ) ընտանիքի միամյա և բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 6 (7) տեսակ, ՀՀ–ում՝ 3: Տերևները՝ գծավոր: Հասկիկները՝ փոքր, երկսեռ համաչափ ծաղիկներով, հավաքված ծաղկաբույլում: Ցողունը կանգուն է, բարձր.՝ մինչև 100–150 *սմ*: Տերևները լայն գծաձև են, եզրերը՝ խորդուբորդ: Ծաղկում է մայիս–հունիսին: Կերային խոտաբույս է: ՀՀ–ում տարածված է Կոտայքի Գառնի և Գեղարդ գ–երում, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերում:

ՎԱՅՐԻ ՀՆԴԿԱՀԱՎ, **կասպիական ուլար** (T. Caspius), ***փասիանների*** ընտանիքի թռչուն: Նստակյաց է, քիչ տարածված: Հանդիպում է միայն ալպ. և ենթալպ. գոտիների սահմաններում: Ապրում է մերկ

ժայռերով, քարքարոտ սարալանջերով ալպ. մարգագետիններում: Մարմնի երկ.՝ 58–62 *սմ*, կ. զ.՝ 1,5–2 *կգ*: Կաքավանման հսկա թռչուն է: Մնվում է բույսերով (սերմեր, արմատներ, սոխուկներ): Ճանաչելի է մոտ 1 *կմ* հեռ–ից լավող բարձր, ականջ ծակող սուլոցներով: 1964–ին գրանցվել է ՀՀ Զանգեզուրի, Բարգուշատի, Վարդենիսի, Մեղրու, Գեղամա, Փամբակի լ–շղթաներում:

ՎԱՅՐԿՅԱՆ, 1. ժամանակի չափման միավոր, ՄՄՀ (SI) հիմն. միավորներից. նշանակում է *վ* (t): Հավասար է $^{133}C_S$ ատոմի հիմն. վիճակի 2 գերնուրբ մակարդակների միջև անցմանը համապատասխանող ճառագայթման 9 192 631 770 պարբերությանը: Այդպես սահմանվող Վ. կոչվում է **ատոմային Վ.**: Աստղագիտ–յան մեջ օգտագործվում է էֆեմերիդական Վ.: 2.**Անկյունային Վ.**, հարթ անկյան արտահամակարգ. միավոր, հավասար է (1/3600)° կամ 4,848 · 10^{-6} *ռադ*, նշանակվում է՝ ″:

ՎԱՅՔ (անցյալում՝ Սոյլան, 1956–90–ին՝ Ազիզբեկով, ք.՝ 1995–ից), ք. ՀՀ Վայոց ձորի մարզում՝ Երևանից 137 *կմ* հվ–արլ.՝ Արփա գետի ափին: Բն.՝ 6 հզ. (2012): Կան հանք. ջրերի, ոչ ալկոհոլ. խմիչքների, շինանյութերի, ձեռագործ գորգերի արտադր–յուններ: Քաղաքից 15 *կմ* արմ–ում պահպանվել է XVII դ–ի կամուրջ, որը 1827–ին վերակառուցվել է ռուս. բանակի գեն. Ի. Ֆ. ***Պասկևիչի*** կարգադրությամբ: Գործում է Սբ Տրդատ եկեղեցին (1996):

ՎԱՅՔԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, լ–շղթա ՀՀ հվ–արմ–ում, Զանգեզուրի լ–շղթայի արմ. լ–ճյուղը: Տ–ածև ձգվում է զուգահեռականին մոտ ուղղությամբ: Ունի ծալքաբեկորավոր կառուցվածք: Երկ.՝ 64 *կմ*, բարձր.՝ մինչև 3120 *մ* (Գոգի լ.): Արմ. մասն աստիճանաբար ցածրանում, ճյուղավորվում և ձուլվում է Նախիջևանի հարթավայրին: Կան մինչև 150 *մ* բարձր–յան էքստրուզիվ, կոնաձև գմբեթներ, ժայռ. մնացուկներ, քարափներ ու դարափուլեր: Լանջերը ծածկված են տափաստաններով, գագաթ. մասը՝ ենթալպ. և ալպ. մարգագետիններով:

ՎԱՆ (Վանյան) Հարություն Զարեհի (ծ. 1936), հոգեբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1961), պրոֆ. (1989): 1969–ին Շվեյցարիայի Բեռն կանտոնում հիմնադրել է սոցիալ. հոգեբուժության ծառայություն. 1979–ից՝նույն կանտոնի հոգեբուժ. համալիրի տնօրեն: Շվեյցարիայի հայկ. մշակութ. միության նախագահ (1975–83): ԵՊԲՀ պատվ. պրոֆ. (1995):

ՎԱՆ, Տուշպա, Շամիրամաշեն, Երվանդավան, ք. Վասպուրական նահանգ–ի Տոսպ գավ–ում՝ Վանա լճի արլ. ափին: Ենթադրվում է, որ «Վ.» անվանումն առաջացել է սեպաձև արձանագրություններում հիշվող Բիայնիլի երկրանունից: Վ.–ի հիմնադրումը վերագրվում է Ասորեստանի Շամիրամ թագուհուն: Իրականում այն հիմնադրել է Ուրարտուի թագավոր ***Սարդուրի Ա***–ն (մ. թ. ա. 835–825), անվանել Տուշպա, դարձրել պետության մայրաքաղաքը: Մ. թ. ա. II–I դդ.–ում՝ Մեծ Հայքի Արտաշեյան, I–IV դդ.–ում Արշակունիների թագավորության կազմում էր՝ որպես արքունի քաղաք: 908–1021–ին եղել է Վասպուրականի թագավորության մայրաքաղաքը: XI դ–ի վերջին Վ. գրավել են սելջուկ–թուրքերը, XIII դ–ի կեսին՝ մոնղոլները: 1555–ի Ամասիայի և 1639–ի Կասրե–Շիրինի թուրք–իրան. հաշտության պայմանագրերով անցել է Օսմ. սուլթանությանը՝ դառնալով Վանի վիլայեթի կենտրոնը: 1862–ին հայ բնակչությունն ընդվզել է թուրք. իշխանությունների դեմ և առժամանակ գրավել Վ.–ի բերդը: XIX դ–ի 2–րդ կեսից Վ. Արմ. Հայաստանի ազգ–ազատագր. շարժումների կենտրոններից էր: Աբդուլհամիդյան կոտորածներից հետո՝ Ա.ՀՊ–ի նախօրյակին, ունեցել է շուրջ 50 հզ. բնակիչ, որից 32 հզ.՝ հայ: 1915–ին Վ.–ի հայությունը, որին միացել էին շրջակա գվթ–ների փախստական հայերը, դիմադրել է թուրք ջարդարարներին (տես ***Վանի հերոսամարտ 1915***), ապա նահանջող ռուս. զորքի հետ գաղթել Արլ. Հայաստան, ապաստանել նաև Անդրկովկասում, Հս. Կովկասում, Պարսկաստանում և այլուր:

«ՎԱՆ ԱՐՅԱՆ», հրտչ–յուն, հիմնադրվել է 1996–ին Երևանում: Հիմնադիր–տնօրենն՝ Վիլյամ Պողոսյան:

ՎԱՆ ԲԱՍՏԵՆ (Van Basten) Մարկո (ծ. 1964), նիդեռլանդացի ֆուտբոլիստ: Եվրոպայի չեմպիոն (1988): Եվրոպ. չեմպիոնների գավաթի (1989, 1990, «Միլանի» կազմում), գավաթակիրների գավաթի (1987, «Այաքսի» կազմում) հաղթող, Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստ (1989, 1990, 1992): Նիդեռլանդների հավաքականի գլխ. մարզիչ (2000–08):

ՎԱՆ ԲԻ (Վան Ֆուսի, 226–249), չին. փիլ.: Սյուան սյուե (ուսմունք սրբազանի մասին) դպրոցի հիմնադիրը (կոնֆուցիականությունը համադրել է դաոսականության հետ, «մաքուր զրույցների» երկխոսության ավանդույթների հետ): «Ի ցզին»–ի և «Դաո դե ցզին»–ի առավել հեղինակավոր մեկնաբանությունների հեղինակ:

ՎԱՆ ԳՈԳ (van Gogh) Վինսենտ (1853–1890), հոլանդացի գեղանկարիչ: Կրքոտ հուզականությունը, կյանքի դրամատիկ. ընկալումն արտացոլվել են 1880–ական թթ–ի 1–ին կեսի գործերում, որոնք հասարակ մարդկանց նկատմամբ ջերմ համակրանքով լեցուն նկարաշարեր են («Գեղջկուհի», «Կարտոֆիլ ուտողները», երկուսն էլ՝ 1885, ևն): Ֆրանսիա փոխադրվելուց հետո (1888–ից) ստեղծել է հիվանդագին լարված, ողբերգ. կերպարներ՝ գույների հակադրություններով, պոռթկուն ոիթմով, պաստոզային գունաբծերի ազատ դինամիկայով («Գիշերային սրճարան», 1888, «Օվերի բնանկար անձրևից հետո», 1890):

ՎԱՆ ԴԵՅՔ (van Dyck, van Dijck) Անտոնիս (1599–1641), ֆլամանդացի գեղանկարիչ: Աշակերտել է Պ. Պ. ***Ռուբենսին***: Գեղանկարչ. վարպետությամբ, զուսպ գուներանգով ստեղծել է ազնվականների հանդիսավոր և մտերմիկ դիմանկարներ («Կառլոս I–ը որսի ժամանակ», մոտ 1635, «Գ. Բենտիվոլիոյի դիմանկարը», մոտ 1623), որտեղ բացահայտել է ժամանակակիցների ներաշխարհը: Բարոկկոյի ոգով ստեղծել է կրոն. և դից. կոմպոզիցիաներ («Հանգիստ եգիպտոսի ճանապարհին», 1620–ական թթ–ի վերջ): Վ. Դ–ի «Խաչից իջեցնելը» կտավը ՀԱՊ–ում է:

ՎԱՆ ԴԵՐ ՎԱԱԼՍ (van der Waals) Յոհաննես Դիդերիկ (1837–1923), նիդեռլանդացի ֆիզիկոս: Արտածել է իրական գազի վիճակի հավասարումը՝ ***Վան դեր Վաալսի հավասարումը***: Ուսումնասիրել է միջմոլ. ուժերը, կրիտիկ. և մազանոթ. երևույթները նաև: Նոբելյան մրց. (1910):

ՎԱՆ ԴԵՐ ՎԱԱԼՍԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄ, Յ. Դ. ***Վան դեր Վաալսի*** առաջարկած (1873) իրական գազի վիճակի հավասարումը՝ մոլ–ի ծավալի վերջավորության և ձգողության միջմոլ. ուժերի հաշվառումով, որը գազի 1 մոլի համար ունի հետևյալ տեսքը՝ $(P + a/V^2)(V-b) = RT$, որտեղ P–ն ճնշումն է, V–ն՝ 1 մոլ–ի ծավալը, T–ն՝ բացարձակ ջերմաստիճանը, R–ն՝ ունիվերսալ գազ. հաստատունը, a և b–ն՝ տվյալ նյութի մոլ–ների փոխազդեցությունը ընութագրող հաստատուններ:

ՎԱՆ ԴԵՐ ՎԱՐԴԵՆ (van der Waerden) Բարտել Լևենդերտ (1903–1996), նիդեռլանդացի մաթեմատիկոս: Նրա «Ժամանակակից հանրահաշիվ» (1930–31) աշխ–ը եզրափակել է հանրահաշվի բաժնի (որն անվանվել է ընդհ. հանրահաշիվ) ստեղծման ժամանակաշրջանը, «Մաթեմատիկական վիճակագրություն» (1957) գիրքը ճանաչել են թե՛ մաթեմատիկոսները, թե՛ կիրառ. բնագավառի մասնագետները:

ՎԱՆ ԷՅՔ (van Eyck) Յան (1385 կամ մոտ 1390–1441), նիդեռլանդացի գեղանկարիչ: XV դ–ի նիդեռլ. արվ–ի հիմնադիրներից: Հենվելով աշխարհաստեղծման միասնականության և ներդաշնակության վրա՝ նորովի է արտացոլել իրական աշխարհի և մարդու բազմակերպ գեղեցկությունը, առավել համոզիչ է արտացոլել լույսով լեցուն տարածությունն ու առարկայական աշխարհը: Հեղինակ է կրոն. թեմաներով նկարների, դիմանկարների («Գենտի խորանը», ավարտել է 1432–ին, Առնոլֆինի ամուսինների դիմանկարը, 1434), մանրանկարների: Նրա եղբայրները՝ **Լամբերտը** (հիշատակվում է 1431–42–ին) և **Հուբերտը** (1385–ի և 1390–ի միջև–1426), նույնպես նկարիչներ են:

ՎԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ [Խաչատուրյան Վանիկ (Հովհաննես) Հակոբի, ծ. 1926], նկարիչ, քանդ., ճարտ., արվեստաբան: Ճարտ–յան դ–ր (2001): Ստեղծագործել է հիմնականում մոնումենտալ գեղանկարչության բնագավառում («Ավարայրի ճակատամարտը», 1956–60, խճանկար, «Հայոց պատմություն», եռամաս որմնանկար, 1956–59, բոլորը՝ Մոնդ–ում): Հեղինակ է «Մեսրոպ Մաշտոց», «Մովսես Խորենացի» դիմանկարների (1958, ՀՀ ԳԱԱ), ճարտ. նախագծերի, կառույցների, քանդակների, գրաֆիկ. գործերի, նաև «Սարսափելի աշխարհ», «Նախնիների աշխարհ», «Ապոկալիպսիս, XX դար» (բոլորը՝ 1956) շարքերի, կոթող–հուշարձանի, «Ուրարտներ, թե ուրարտացիներ, ովքե՞ր են նրանք» (ռուս., 1991) գրքի, «Գույնը IV–XIX դդ. հայկական ճարտարապետության մեջ» (հայ., ռուս., անգլ., 2008, Գլխ. մրց., 2009, Մոսկվա), «Մովսես Խորենացի: Հայոց պատմություն» (հայ., ռուս., անգլ., 2016, Մեծ մրց., 2016, Բիշքեկ) գիրք–ալբոմների: ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2–րդ աստիճանի մեդալ (2011):

ՎԱՆ ՄԱՆ (մ. թ. ա. 45–մ. թ. 23), չին պետ. գործիչ, կայսր՝ մ. թ. 9–ից: Մ. թ. ա. 8–ին դարձել է Հան կայսրության բարձրագույն աստիճանավոր, իսկ մ. թ. 8–ի դեկտ–ին, կատարելով պալատ. հեղաշրջում, իրեն հռչակել է կայսր: Իրականացրել է մի շարք բարեփոխումներ՝ վերացրել է հողի մասնավոր սեփականությունը, արգելել հողի և ստրուկների առևտուրը, յուրաքանչյուր ընտանիքի հատկացրել հող: 12–ին խոշոր հողատերերի ճնշմամբ

հարկադրված վերացրել է հողային ռեֆորմը և հողի ու ստրուկների առուծախի արգելքը: 15-ին երկրում բռնկել է ժող. ապստամբություն: 23-ին՝ ապստամբների մայրաքաղաք Չանյանը գրավելիս, սպանվել է:

ՎԱՆ ՅԱՄԻՆ (Վան Շոուժեն, 1472–1529), չին նորկոնֆուցիական փիլ., գրականագետ, պետ. գործիչ: Բարոյական վարքագծում կարևորել է գիտելիքի և գործողության միասնությունը և պնդել, որ ճանաչողությունը բնորոշվում է մարդուն հատուկ բնածին բարոյական նորմերով: Ուսմունքը տարածվել է Կորեայում և Ճապոնիայում:

ՎԱՆ ՉՈՒՆ (27–մոտ 100), չին փիլ., հանրագիտակ: Հեղինակ է «Դատողությունների կշռադատում» («Լուն հեն») աշխատության, որտեղ ներկայացրել է մարդկային բնության 3 տեսակների (բարին, չարն ու բարին և չարը համատեղող) մասին տեսությունը, կոնֆուցիականությունը միավորվել է դաոսականության:

ՎԱՆ ՎԵՅ, Մո Ցզե (699/701–759/761), չին նկարիչ, գեղագիր, բանաստեղծ, երաժիշտ: Չին. միագույն բնանկարչության հիմնադիրը: Քնար. բնանկարներում ստեղծել է բնության ընդհանրացված վեհ կերպարներ («Ձյունապատ լեռներ», «Ձնելուց հետո»): Պահպանվել են գործերի կրկնօրինակները: Բանաստեղծություններում նրբորեն է արտահայտել բնության հազիվ նշմարելի գույներն ու երանգները:

ՎԱՆ ՖԼԵԿ (Van Vleck) Ջոն Հազբրուկ (1899–1980), ամերիկացի ֆիզիկոս: Ստեղծել է դիա- և պարամագնիսականության քվանտ. տեսությունը: Հայտնաբերել է անհամաչափ մոլ-ների պարամագնիսականությունը (Վանֆլեկյան պարամագնիսականություն):

Նոբելյան մրց. (1977, Ֆ. *Անդերսոնի* և Ն. *Մոտտի* հետ):

ՎԱՆ ՖՈՒՉԺԻ (1619–1692), չին փիլ., հանրագիտակ: Զարգացրել է նախասկզբն. ռեալության՝ «մեծ դատարկության» մասին ուսմունքը, որը միասն. և անջնջանալի սուբստանցիայի՝ պնևմայի համընդգրկուն զետեղարան է:

ՎԱՆԱ ԼԻՃ (ինուհ՝ Տոսպա լիճ, Ռշտունյաց ծով, Բզնունյաց ծով, Աղթամար), անհոսք աղի լիճ Հայկ. լ–աշխարհի հվ–ում՝ Հայկ. Տավրոսի հս–արլ. մասի, Նեմրութ և Սիփան լ–զանգվածների, Կորդվաց, Ծաղկանց լ–ների, Վասպուրականի լ–շրթայի միջև՝ 1720 *մ* բարձր–յան վրա: Երկ.՝ մոտ 125 *կմ*, առլգն լայն.՝ մոտ 51 *կմ*, մակերեսը՝ 3760 *կմ*^{2}, խոր.՝ մինչև 451 *մ*, ավազանը՝ մոտ 17,8 հզ. *կմ*^{2}: Հս–արլ–ում Արճեշի ծոցն է, լճում՝ Լիմ, Կտուց, Աղթամար, Արտեր կղզիները: Լիճ են թափվում մոտ 30 գետ ու գետակ, որոնցից առավել խոշորներն են Արճեշը, Բերկրին (Բանդիմահի), Մարմետը, Խոշաբը (Հայոց ձոր), Հերիշատը (Իրիշատ) ևն: Ջուրն աղի է (19–22 ‰), օրգ. աշխարհը՝ աղքատ: Ձկներից կա միայն տառեխ, թռչուններից՝ որորներն ու ջրագոռավները, որոնք այստեղ են գալիս հս–արմ–ից՝ Նազիկ լճից: Վ. լ–ին բնորոշ են մակարդակի պարբեր. տատանումներ, որի հետևանքով որոշ բնակավայրեր (հին Արճեշ ք.), հս–արմ. 3 կղզիներ (Արծկե, Ծիպան, Տոքյան) ծածկվել են ջրով: 1838–40-ին լճի մակարդակը բարձրացել է 3–4 *մ*-ով: Հնագույն ժամանակներից ի վեր լճում եղել է նավարկություն: Այժմ կա լաստառաքում (Դատվան–Վան): Ափերին են Արծկե, Ականց, Բերկրի, Վան, Ոստան, Դատվան, Խլաթ և այլ բնակավայրեր, շրջապատում կան հայկ. մշակույթի բազմաթիվ հուշարձաններ:

ՎԱՆԱԴԱՏԱՉՓՈՒԹՅՈՒՆ, քանակ. վերլուծության տիտրաչափ. եղանակ, որի հիմքում ընկած է $VO^{3-} + 4H^+ + e \rightarrow VO^{2+} + 2H_2O$ (ստանդարտ էլեկտրոդ. պոտենցիալը՝ +1,00 Վ) ռեակցիան: Տիտրման ավարտը որոշում են ինդիկատորներով, ամպերաչափ. կամ պոտենցաչափ. եղանակներով:

ՎԱՆԱԴԱՏՆԵՐ մետաղների, վանադիումային թթուների մետաղ. աղեր, ազատ վիճակում չեն անջատվել, օր.՝ նատրիումի վանադատը՝ $NaVO_3$: Վ. միջանկյալ արգասիքներ են վանադիումի արտադր–յան մեջ: Ապակու, ջնարակների բաղադրիչներ, լազեր. նյութեր, բյուրեղաֆոսֆորներ և այլ ռեագենտներ են վերլուծ. քիմիայում:

ՎԱՆԱԴԻՈՒՄ (Vanadium), V, տարրերի պարբեր. համակարգի V խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 23, ա. զ.՝ 50,9415: Կոչվել է ի պատիվ սկանդ. գեղեցկության աստվածուհի Վանադիսի: Սինխրապողպատագույն պինդ մետաղ է, խտ.՝ 6,11 *գ/սմ*^{3}, $t_{հալ.}$՝ 1920°C: Կայուն է ջրի և թթուների նկատմամբ: Երկրակեղևում ցրված է, հաճախ ուղեկցում է երկաթին (երկաթի հանքաքարերը Վ.-ի արդ. հումք են): Ավիացիոն և տիեզ. տեխնիկայում, ծով. նավաշինության մեջ կիրառվող կառուցվածք. պողպատների և համաձուլվածքների լեգիրող բաղադրիչ է, գերհաղորդիչ համաձուլվածքների բաղադրիչ: Վ.-ի միացություններն օգտագործվում են մանածագործ., լաքաներկերի, ապակու արդ–յան մեջ:

ՎԱՆԱԴԻՈՒՄԻ ՕՔՍԻԴ, V_2O_5, կարմիր կամ կարմրադեղնավուն բյուրեղ. թունավոր նյութ է, $t_{հալ.}$՝ 680°C: Վատ է լուծվում ջրում: Ծծմբական թթվի ստացման կատալիզորդ է, հատուկ ապակիների, ջնարակների և լյումինոֆորների բաղադրիչ:

ՎԱՆԱԴԻՈՒՄՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, մետաղօրգ. միացություններ, որոնց մոլ–ներում վանադիումի ատոմն անմիջականորեն միացած է ածխածնի ատոմին: Կիրառում են որպես կատալիզորդ:

ՎԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ, միջնադար. կրոն. դպրոցի տիպ: Ստեղծվել է Հնդկաստանում՝ բուդդ. տաճարներում, քրիստոնեության մուտք գործելուց հետո տարածվել Բյուզանդիայում, Արմ. Եվրոպայի երկրներում (վանքերին կից): Եղել են 3 տեսակի՝ քահանա–վան. (պատրաստել են եկեղեցու ծխական ծառայության), դպրոց–հանրակացարան. (պատարաստել են վան. ծառայության) և գրագիտություն ու գրագրություն սովորեցնող: Հայ իրականության մեջ Վ. դ–ի տարատեսակ էր Ժառանգավորաց վարժարանը, որտեղ երևելի վանականին կցել են 3–4 աշակերտ, պարապել են խցերում:

ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ, Վանական Վարդապետ Տավուշեցի (1181–1251), պատմագիր, մատենագիր, մանկավարժ, եկեղեց. և հաս. գործիչ: 1201-ին օծվել է քհն., դարձել *Մխիթար Գոշի* աշակերտն ու գործի շարունակողը: Ուսուցչի հետ մասնակցել է Լոռեի (1204) և Անիի (1207) եկեղեց. ժողովներին: 1206/10-ին ստացել է վրդ–ի աստիճան, վերադարձել Տավուշ: Հիմնադրել է Խորանաշատի վանքն ու ուսումնագիտ. դպրոցը:

ՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, «երկրային կյանքից հեռանալու», ունեցվածքից հրաժարվելու, ճգնակեցության (պարտադիր կուսակրոնություն ևն), աղոթքներով Աստծուն մերձենալու ուխտով վանքերում (տես *Մենապան*) կամավոր միավորված կրոն. խավ: Ծառայել է պաշտոն. եկեղեցու հեղինակության ամին՝ ջանալով ժող. զանգվածների մեջ առաջացնել կրոն. ջերմեռանդություն: Բուդդայականության մեջ Վ. առաջացել է մ. թ. ա. VI–V դդ–ում, քրիստոնեության մեջ՝ IV–V դդ–ում:

ՎԱՆԱԿԱՆ, օբսիդիան, հրաբխ. ապակի, միասեռ ապակենման հրաբխ. թթու ապար՝ սովորաբար՝ մուգ երանգներով (սև, կարմրասև, դարչնագույն, ծխագույն, գորշ) և խեցային ջարդվածքով: Կարծր.՝ 5, խտ.՝ 2,5–2,6 *գ/սմ*^{3}: Հեշտ հղկվող է: ՀՀ–ում Վ.-ի կուտակումներ կան Արտենիի (ամենախոշորը), Հատիսի, Գութանասարի, Գեղասարի, Սպիտակասարի լանջերին և մերձգագաթ. մասերում:

ՎԱՆԱՀԱՅՔ, վան. հաստատության հոգևոր առաջնորդ: Պաշտոնը սահմանվել է IV–V դդ–ում՝ մի շարք երկրներում քրիստոնեությունը պետ. կրոն հռչակվելուց հետո: ՀԱԵ–ում Վ. անմիջականորեն ենթարկվում է Ամենայն հայոց կաթողիկոսին:

ՎԱՆԱՁՈՐ, գետ ՀՀ Լոռու մարզում, Փամբակի աջ վտակը: Սկիզբ է առնում Փամբակի լ–շղթայի Մայմեխ լ–գագաթի հս. լանջերից՝ 2800 *մ* բարձր–ից, Վանաձոր ք–ի տարածքում միանում է Տանձուտին: Երկ.՝ 16 *կմ*, ավազանը՝ 120 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 0,52 *մ*^{3}/*վ*: Մնումը հիմնականում ձնաանձրևային է, վարարումը՝ գարնանը: Գետահովիտն ունի ռեկրեացիոն նշանակություն:

ՎԱՆԱՁՈՐ (մինչև 1935–ը՝ Մեծ Ղարաքիլիսա, 1935–92–ին՝ Կիրովական), ք. ՀՀ–ում, Լոռու մարզկենտրոնը, Երևանից 115 *կմ* հս–արմ.՝ Փամբակի և Բազումի լ–շղթաների միջևեռն. գոգավորությունում՝ Տանձուտ ու Փամբակ գետերի միախառնման վայրում՝ 1350 *մ* բարձր–յան վրա: Բն.՝ 104,9 հզ. (2012): Կան թեթև, մեքենաշին., քիմ., սննդի, շինանյութերի, կահույքի արտադրյան ձեռն–ներ: Ունի բուսաբ. այգի: Գործում են Վանաձորի պետ. մանկավարժ. ինստ–ը, ՀՊՃՀ–ի, ՀԱԱՀ–ի, ՀԱՊ–ի և Գեղագիտ. ազգ. կենտրոնի մասնաճյուղերը, Հովհաննես Աբելյանի անվ. դրամատիկ., տիկնիկ. թատրոնները, Ստեփան Զորյանի տուն-թանգարանը (1988–ից) ևն: Վ.-ում է ՀԱԵ Գուգարաց թեմի առաջնորդանիստ Սբ Աստվածածին եկեղեցին:

Վ.-ում և շրջակայքում պահպանվել են կիկլոպյան կառույցների (մ. թ. ա. II հզ–ամյակ) մնացորդներ, էնեոլիթի, բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների բնակատեղիներ: 1828-ի երկրաշարժից ավերվել է XIV դ–ի եկեղեցին, 1831-ին՝ նույն վայրում կառուցվել է նորը, իսկ 1895-ին՝ ռուս. եկեղեցին:

ՎԱՆԱՁՈՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ Ստեփան Աղաջանյանի անվան (1963–ից): Հիմնադրվել է 1957-ին՝ Սարտիրոս *Սարյանի* և Արա *Սարգսյանի* նախաձեռնությամբ: Դասավանդում են գեղանկարչություն, քանդ–յուն, դեկորատիվ–կիրառ. արվ. և այլ առարկաներ: Ընդունվում են 8–12 տարեկան երեխաները: 1917-ին ուներ մոտ 100 սովորող:

ՎԱՆԱՁՈՐԻ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ Հովհաննես Աբելյանի անվան

(1936–ից), պետ., հիմնադրվել է 1931–ին: Թատրոնի վերելքին նպաստել են ռեժ–ներ Աշ–Մաթր, Ա. Սարգսյանը, Մ. Ռաֆայելյանը, Վ. Շահվերդյանը (1973–96–ին, 2008–ից՝ գեղ. ղեկ.), նկարիչներ Թ. Բերբերյանը, Ս. Արուտչյանը, Ե. Մաֆրոնովը, Ե. Գևորգյանը, դերասաններ Ա. Փաշայանը, Ժ. Էլոյանը, Ծ. Վրույրը, Հ. Ազիզյանը (1995–2000–ին՝ տնօրեն և գեղ. ղեկ., 2001–02–ին՝ գլխ. ռեժ.), Ռ. Մխիթարյանը, Ա. Աղաբեկյանը, Ռ. Գյուրջյանը, Ռ. Մարգարյանը և ուր.: Բեմադրվել են Կ. Սիմոնովի «Ռուսական հարց» (1946), Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար» (1954), Վ. Շեքսպիրի «Զմեռային հեքիաթ» (1954), Պ. Կոգոուտի «Այդպիսի սեր», Շիրվանզադեի «Քաոս» (1977), Ա. Պ. Չեխովի «Երեք քույր» (1987), Ս. Խալաթյանի «40 օր համբառնալուց առաջ» (1999), Հ. Մաթևոսյանի «Աշնան արև» (2000) և այլ պիեսներ:

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ Հովհաննես Թումանյանի անվան (2001–ից), ստեղծվել է 1969–ին՝ Հայկ. հեռակա մանկավարժ. ինստ–ի հիմքի վրա: Մինչև 2015–ը՝ ինստ.: Ունի 5 ֆակ., 2016–ին՝ շուրջ 4 հզ. ուսանող: Ռեկտորներ՝ Ալեքսանդր Գրիգորյանց, Տելեմաք Վարդումյան, Գևորգ Խրլոպյան, Սերգեյ Մերգելյան, Ռաֆիկ Եղոյան, Գուրգեն Խաչատրյան (2006–ից):

ՎԱՆԱՁՈՐԻ ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ պետական, հիմնադրվել է 1993–ին Վանաձորում՝ Ս. Մելիքյանի (նաև գեղ. ղեկ.) նախաձեռնությամբ, բացվել՝ 1994–ին: Բեմադրվել են «Անխելք մարդը», «Շունն ու կատուն», «Բարեկենդան» (երեքն էլ՝ ըստ Հ. Թումանյանի), «Տերտերն ու իր Բալդի ծառան» (ըստ Ա. Ս. Պուշկինի), «Հենզելն ու Գրետելը» (ըստ Գրիմ եղբայրների), «Կարմիր Գլխարկը» (ըստ Շ. Պեռոյի) և այլ հեքիաթներ: Տիկնիկավարներից են Կ. Քոչարյանը, Է. Ավագյանը, Ս. Մարգարյանը, Ն. Առաքելյանը, Շ. Իսմաիլյանը և ուր.:

ՎԱՆԱՆԴ, գվո Այրարատ նհնգ–ում, Ախուրյան գետի հովտում: Հս–ից Ջարիշատի լ–ներով սահմանակից էր Գուգարքի Ձավախք, արլ–ից՝ Եղնախաղի պարով և ***Կարսի սարահարթով***՝ Այրարատի Աշոցք և Շիրակ, հվ–ից՝ Արշարունիքի (Երասխաձոր) և Մեծրաց լ–ներով՝ Արեղյանք գվո–ներին: Արմ–ում Կարմիր Փորակ լ–շղթայով բաժանվում էր Տայքի Պարտիզաց փոր, Բերդաց փոր, Կող և Գուգարքի Արտահան գվո–ներից: Վ.–ի տարածքը մ. թ. ա. IX դ–ի վերջին ***Մննուան*** միացրել է Ուրարտուին: VII դ–ի կեսին Վ. նվաճել են արաբները: VIII դ–ի վերջից Վ. դարձել է Բագրատունիների ժառանգ. տիրույթ, 885–ից մտել նրանց թագավորության մեջ: 961–1065–ին եղել է Կարսի թագավորության կենտր. գվո–ը: Այնուհետև կենտրոնի՝ Կարս ք–ի անունով ավելի հաճախ կոչվել է Կարսի գվո: Այս ժամանակաշրջանում Վ.–ի հվ. մասը կոչվել է Փորակ կամ Կարմիր Փորակ: 1065–ին Վ. նվաճել են սելջուկ–թուրքերը: 1206–ին հայ–վրաց. միացյալ զորքերն ազատագրել են գվո–ը: 1639–ի պայմանագրով Վ. անցել է Օսմ. Թուրքիային: Մինչև XIX դ–ի 1–ին քաոորդը մտել է Կարսի և Չըլդըրի փաշայությունների մեջ: XIX դ–ի կեսից եղել է Էրզրումի վիլայեթի կազմում: 1828–30–ին Վ.–ի հայ բնակչության զգալի մասը տեղահանվել և հաստատվել է Արլ. Հայաստանում (մեծ մասամբ՝ Շիրակում): 1878–ին Վ. անցել է Ռուսաստանին. մտել է Կարսի մարզի մեջ: 1918–20–ին Վ. ՀՀ կազմում էր, 1921–ին ***Կարսի պայմանագրով*** կրկին տրվել է Թուրքիային:

ՎԱՆԱՆԴԵՑԻ (Փորսուղյան) Գուրգեն Արշակի (1898–1937), գրականագետ, գրաքննադատ: Հեղինակ է Խ. Աբովյանին, Րաֆֆուն, Շիրվանզադեին, Պ. Պռոշյանին, Ե. Չարենցին, Մ. Սարյանին և ուր. նվիրված գրականագիտ., արվեստաբան. աշխ–ների:

ՎԱՆԱՆԴԵՑԻ Հովհաննես, **Հովհան** (Միրզոյան Ամիրզադե Միրզայի, 1772–1841), բանաստեղծ, մանկավարժ: Սարգիս ***Վանանդեցու*** պապը: Հեղինակ է «Արփիական Հայաստանի» (1836), «Ոսկի դար Հայաստանի» (1841), «Տեսարան հանդիսիցն Հայկայ, Արամայ եւ Արայի» (1856) դյուցազներգությունների, որոնցով որոշակի ձև ու ուղղություն է տվել հայկ. կլասիցիզմին, «Ճառ ներբողական ի Սուրբ Խաչն Քրիստոսի...» (հրտ.՝ 1853) երկի: Վ.–ու «Առ Հայաստան» բանաստեղծությունը Գաբրիել ***Երանյանը*** վերածել է երգի («Հայաստան, երկիր դրախտավայր»):

ՎԱՆԱՆԴԵՑԻ (Միրզայան) Սարգիս Գրիգորի (1830–ական թթ.–1871), դրամատուրգ, դերասան, թատեր. գործիչ, խմբ.: Հովհաննես ***Վանանդեցու*** թոռը: «Միություն» հանդեսի և «Իրավունք» թերթի խմբ–ը, «Վասպուրական թատրոնի» հիմնադիր–ղեկ–ներից և առաջատար դերասաններից (Արշակ՝ Մ. Պեշիկթաշլյանի «Արշակ Բ», Սավուղ՝ Վ. Ալֆիերիի «Սավուղ», ևն): Հեղինակ է «Մեծն Ներսէս կամ Հայաստանի բարերարը» (1858), «Միհրդատ» (1858), «Վիրգինեա» (1858) ողբերգությունների (երեքն էլ բեմադրվել են):

ՎԱՆԱՆԴԵՑԻՆԵՐ, գրահրտ–տպագրիչ–ներ Գողթն գվո–ի Վանանդ գ–ից: Գործել են XVII դ–ի վերջ–XVIII դ–ի 1–ին քաոորդին Ամստերդամում: Տպարանը 1684–ին հիմնադրել է ***Մատթեոս Վանանդեցին***, որին 1690–ին միացել է ***Դուկաս Վանանդեցին***, 1694–ին՝ ***Թովմաս Վանանդեցին*** (ստանձնել է տնօրինությունը), 1696–ին՝ Միքայել Վանանդեցին: Վ.–ի տպարանը գործել է մինչև 1729–ը, տպագրել ավելի քան 20 անուն գիրք, այդ թվում՝ առաջին անգամ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»–ը (1695), նաև հայ. առաջին տպագիր քարտեզը՝ «***Համապարած աշխարհացոյց***»–ը (1695):

ՎԱՆԱՆԴԻ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ 1054, կազմակերպել է Կարսի հայոց թագավոր Գագիկ Աբասյանը՝ իր տերություն ներխուժած սելջուկ–թուրքերի դեմ: Գագիկ Աբասյանը Վանանդի սահմանի մոտ, ընդառաջ ելնելով թշնամուն, սկզբում հաջողության է հասել, սակայն մարտի վերջում ընկել է շրջապատման մեջ: Սելջուկյան բանակը, զգալի կորուստներ կրելով այդ մարտում, այնուհետև չի փորձել նվաճել Կարսը:

ՎԱՆԱՆԴԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, տես *Կարսի թագավորություն*:

ՎԱՆԱՍՈՒՐ, հյուրընկալության աստվածություն հայկ. դից–յան մեջ: Համարվել է պանդուխտների, օտար ճամփորդների հովանավորը, նրանց ապաստան, օթևան տվողը: Վ.–ի տոնը նշվել է Ամանորի առաջին օրը, որի համար հաճախ Վ.–ին անվանել են Ամանորի դից:

ՎԱՆԱՍՏՈՒՐ Վարդան (Ավագյան Վարդ Գրիգորի, ծ. 1937), բանաստեղծ: Հեղինակ է «Լույսի կոհակներ» (1969), «Լեռնաստանս» (1976), «Լույսի արցունքներ» (1983), «Լույս իմացյալ» (1991), «Խորան լուսո» (1997), «Մենախոսություն վերջալույսի» (2005), «Խոսքերի աքսորավայր» (2011) և բանաստեղծությունների այլ ժող–ների:

ՎԱՆԱՏՈՒՐ, հայկ. հեթանոս. տոմարի ամիսների 14–րդ օրվա անունը. կոչվել է ***Վանապուր*** աստծու անունով:

ՎԱՆԴԱԼ (Vandal) Ալբեր (1853–1910), ֆրանսիացի պատմաբան, կոմս: Ֆրանսիայի ակադ–ի անդամ (1896): Ա. Սորելի հետևորդը: Վ.–ի գործերը վերաբերում են Ֆրանսիայի պատմության նապոլեոնյան ժամանակաշրջանին:

ՎԱՆԴԱԼԻԶՄ, մշակութ. և նյութ. արժեքների անմիտ ոչնչացում: Բառն առաջացել է հինգերմ. ***վանդալներ*** ցեղանունից, որոնք 455–ին կողոպտել են Հռոմը և ոչնչացրել անտիկ մշակույթի բազմաթիվ հուշարձանները:

ՎԱՆԴԱԼՆԵՐ, արլ. գերմանների ցեղախումբ: Սկզբում բնակվել են Սկանդ. թ–կղզում: Մ. թ. ա. II–I դդ–ում գաղթել և հաստատվել են Բալթիկ ծովի հվ., III դ–ում՝ Դանուբ գետի ափերին: V դ–ի սկզբին ալանների հետ շարժվել են արմ., մի քանի տարվա ընթացքում ամայացրել Գալլիան և 409–ին հաստատվել Իսպանիայում: Գեյզերիխ թագավորի (428–477) գլխավորությամբ 429–ին անցել են Ջիբրալթարը, տասը տարվա ընթացքում նվաճել հոռմ. Աֆրիկա պրովինցիան (439–ին գրավել են Կարթագենը) և հիմնադրել իրենց թագավորությունը: 455–ին կողոպտել ու ավերել են Հռոմը: Թուլացած Վ.–ի թագավորությունը 533–534–ին նվաճել է Բյուզանդիան:

ՎԱՆԴԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ, հանրապետ. կառ–յունների պայքարը ռոյալիստական խռովությունների դեմ Ֆրանս. մեծ հեղ–յան ժամանակաշրջանում: Կոչվել են Վանդեա դեպարտամենտի՝ խռովությունների գլխ. կենտրոնի, անունով: Խռովության առիթ է ծառայել Կոնվենտի 1793–ի փետր. 24–ի դեկրետը՝ 300 հզ. մարդու բանակ զորակոչելու մասին: 1793–ի հոկտ–դեկտ–ին հանրապետ. զորքերը նրանց ջախջախել են:

ՎԱՆԴԵՐՎԱԱԼՅԱՆ ՈՒԺԵՐ, տես *Միջմոլեկուլային փոխազդեցություն*:

ՎԱՆԴԵՐՎԵԼԴԵ (Vandervelde) Էմիլ (1866–1938), բելգիացի սոցիալիստ, ռեֆորմիստ: II Ինտերնացիոնալի միջազգ. սոց. բյուրոյի նախագահ (1900): 1914–ից կառ–յան կազմում և մինչև 1937–ը բազմիցս զբաղեցրել է նախարար. պաշտոններ:

«ՎԱՆԵՆՈՒ ԱՎԵՏԱՐԱՆ», XIII դ–ի ձեռագիր մատյան, Արցախ–Ուտիքի մանրանկարչության լավագույն նմուշներից (Մտնդ., ձեռ. № 4823): Ընդօրինակվել է Արցախի Փառիսոս գվո–ի Խորանաշատ վանքում 1224–ին, պատվիրատու՝ Վանենի (զորավար Զաքարե Խաղբակյանի դուստրը): Պատկերազարդված է 10 խորաններով և 4 ավետարանիչների պատկերներով: «Վ. Ա.» առաջիններից է, որտեղ օգտագործվել է հայկ. կետադրության նշանների մեծ մասը:

ՎԱՆԵՎԱՆ, ճարտ. համալիր ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ գ–ից 24 *կմ* հեռ–յան վրա: Միանավ թաղածածկ և գմբեթավոր եկեղեցիների միջև քառակուսաձև հատակագծով գավիթն է

(980-ական թթ., հավանաբար կառուցել է Աշոտ Գ-ի որդին՝ Գագիկը)։ Գլխ.՝ Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (903, կառուցող՝ Հայոց սպարապետ Շապուհ Բագրատունի)՝ ներքուստ քառախորան է, արլ–ում՝ զույգ ավանդատներով։ Վանքի արմ. կողմում միաբանների խցերն են։ Վերականգնվել է 1983–88-ին։

ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌ, հայ-ի «կը» ճյուղի բարբառ։ Խոսվել է Վան ք–ում և մերձակա՝ Սղգա, Ավանց, Լեսկ, Ծվստան, Արտամետ, Բերդակ գ–երում։ Ունի երկաստիճան ձայնեղազուրկ (պ–փ) բաղաձայն. համակարգ։

ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, Ուրարտու, Բիայնիլի, Արարատեան թագավորություն, Նաիրի, պետություն Հայկ. լ–աշխարհում մ. թ. ա. IX–VII դդ–ում։ Մ. թ. ա. 830-ական թթ–ին *Սարդուրի Ա* արքան հիմնադրել է Տուշպա (Տոսպ, Վան) մայրաքաղաքը, որի շուրջը կազմավորվել է Վանի հայկ. թագավորությունը։ *Մենուայի* օրոք (մոտ 810–786) կառուցվել են ցարդ գործող 72 կմ երկ–յան Մենուայի ջրանցքը, *Մենուախինիլի* բք ևն։ *Արգիշտի Ա*-ն (786–764) տերությունը հասցրել է ռազմաքաղ. հզորության գագաթնակետին։ *Սարդուրի Բ*-ն իր առաջնակարգ դիրքն Առաջավոր Ասիայում զիջել է Վ. թ–յանը։ Մ. թ. ա. 782-ին հիմնադրել է *Էրեբունի* (Երևան), 776-ին՝ *Արգիշտիխինիլի* ք–ները։ *Սարդուրի Բ*-ի (764–735) օրոք տերությունն ունեցել է առավելագույն տարածքը։ Վերջին հզոր գահակալ *Ռուսա Բ*-ն (685–645) խթանել է քաղաքաշինությունը։

Պետության անկմանը նպաստել են նաև հս–ից ասպատակող սկյութ. ցեղերը (ժամանակն ստույգ հայտնի չէ)։

Վ. թ–յան դիցարանը գլխավորել է գերագույն երրորդությունը՝ *Խալդին*, *Թեյշեբան*, *Շիվինին*։ Խալդի աստծո կինը դիցարանի գլխ. աստվածուհի Արուբանին էր։ Իշպուինի արքայի օրոք (825–810) ստեղծվել է տեղ. սեպագրերի համակարգը (տես *Ուրարտական արձանագրություններ*)։ *Ուրարտներենում* բառապաշար. բնույթի մի շարք ընդհանրություններ ու նույնություններ կան արդի հայ–ի հետ։ Արքաները մեծ նվաճումների են հասել քաղաքաշինության ու ամրաշինության բնագավառներում. Սարդուրի Բ-ն Տուշպայից ոչ հեռու կառուցել է Սարդուրիխինիլին, Ռուսա Բ-ն՝ Թեյշեբաինի ք–ը (հնավայր *Կարմիր բլուր*) ևն։ Զարգացել է տաճարաշինությունը (*Արդինի–Մուսասիր*, Էրեբունիի «Սուսի», Խալդիին նվիրված տաճարները ևն)։ Պեղածո մշակութ. արժեքները (սաղավարտներ, վահաններ, գոտիներ, կապարճներ) զարդարված են մարտակառքերի, հեծյալների, քրմերի, առյուծների, ցուլերի ու թևավոր էակների պատկերաքանդակներով։ Տես նաև *Ուրարտագիտություն*։

ՎԱՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 1896, Վան ք–ի և Վանի նհնզ–ի գյուղերի հայ բնակչության մարտերը թուրք ջարդարարների դեմ արդուլհամիդյան կոտորածների ժամանակ։ Դիմադրությունն սկսվել է հունիսի 3-ին։ Հանդիպելով հայերի հուժկու հակահարվածին և տալով զգալի կորուստներ՝ թուրքերը նահանջել են։ Ինքնապաշտպ–յան ղեկները համաձայնել են Վանում Անգլիայի հյուպատոսի և թեմական առաջնորդ Սահակ Բագրևանդցու՝ դիմադրությունը դադարեցնելու առաջարկությանը։ Հունիսի 8-ին մոտ 1500 մարդ հեռացել է Վանից, բայց դեպի Պարսկաստան ճանապարհին թուրքերը հարձակվել են նրանց վրա։ Համառ մարտերից հետո միայն 20 հոգու է հաջողվել հասնել Սալմաստ. մնացածը զոհվել են։ Քաղաքից մարտիկների հեռանալուց հետո թուրք. զինվորներն ու համիդեականները ներխուժել են հայկ. թաղամասեր և կոտորել խաղաղ բնակչությանը (շուրջ 20 հզ.)։ Տես նաև *Վանի հերոսամարտ 1915*։


ՎԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ, հիմնադրվել է 1881-ին՝ Մկրտիչ *Փորթուգալյանի* (տեսուչ), *Մկրտիչ Ա. Վանեցու* և ռուս փոխհյուպատոս Կոստանդին *Կամսարականի* ջանքերով։ 1896-ի *Վանի ինքնապաշտպանության* ժամանակ վարժարանի անձնակազմը կռվել է առաջին շարքերում։ Փակվել է այդ դեպքերից հետո։

ՎԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏ 1915, Վան ք–ի և շրջակա գյուղերի հայ բնակչության ինքնապաշտպ. մարտերը թուրք ջարդարարների դեմ Մեծ եղեռնի ժամանակ։ ԱՀՊ-ի սկզբին *Վանի վիլայեթում* կազմակերպվել են հայերի զանգված. կոտորածներ։ Այդ պայմաններում Վանի վիլայեթի մի շարք գվո–ներում և գվոկ–ներում (Շատախ, Հայոց ձոր, Արճեշ ևն) հայերը դիմել են ինքնապաշտպ–յան։ Սարտ. գործողություններն սկսվել են ապրիլի 7–ին։ Հայերը հաջողությամբ դիմագրավել են թշնամուն, մեծ կորուստներ պատճառել և հետ շպրտել նրա բոլոր գրոհները։ Իմանալով, որ ռուս. առաջապահ զորամասերը և հայ կամավոր. գնդերը մոտենում են Վանին, թուրքերը դիմել են փախուստի։ Մայիսի 3(16)-ին քաղաքն ազատագրվել է։ Վանի բերդի վրա բարձրացվել է հայկ. հաղթական դրոշը։ 1915-ի մայիսի 6(19)-ին ռուս. զորքերը և հայ կամավորները մտել են Վան, քաղաքն ազատագրվել է թուրք. պաշարումից, որով ավելի քան 150 հզ. հայ փրկվել է անխուսափելի ոչնչացումից։ Վ. հ. հայ ազգ–ազատագր. պայքարի փառավոր էջերից է։

ՎԱՆԻ ՎԻԼԱՅԵԹ, **Վանի էյալեթ**, հայկ. աղբյուրներում՝ **Վանի կուսակալություն, Վանի նահանգ,** Օսմ. սուլթանության վտմ Արմ. Հայաստանում՝ Վան կենտրոնով։ Ստեղծվել է Թուրքիայի և Իրանի միջև կնքված Ամասիայի հաշտության պայմանագրից (1555) հետո։ Հիմնականում ընդգրկել է հին Վասպուրական նհնգ–ի տարածքը։ XX դ–ի սկզբին տարածքը 39,3 հզ. կմ² էր։ Մեծ եղեռնի նախօրեին հայերի թիվը վիլայեթում 215–220 հզ. էր։ Եղեռնի ժամանակ հայերը դիմել են ինքնապաշտպ–յան. մեծ մասը փրկվել է կոտորածից (տես *Վանի հերոսամարտ 1915*)։ Մայիսին, երբ ռուս. զորքերը և հայկ. կամավոր. ջոկատներն ազատագրել են Վ. վ., այնտեղ ստեղծվել է հայկ. կառ–յուն, սակայն հուլիսին, ռուս. զորքերի անսպասելի նահանջի հետևանքով, վիլայեթի ավելի քան 200 հզ. հայերն ստիպված տեղափոխվել են Արլ. Հայաստան։ 1927-ին Վ. վ-ի տարածքում այլևս հայեր չէին բնակվում։

ՎԱՆԻԼ, խոլորձազգիների ընտանիքի վերգետնյա կամ էպիֆիտ բույսերի ցեղ։ Օդ. արմատներով մագլցող լիանաներ են։ Հայտնի է Վ-ի մոտ 100 տեսակ։ Որոշ տեսակների պտուղները պարունակում են բուրավետ, հոտավետ նյութեր (օր.՝ վանիլին) և օգտագործվում են օծանելիքի ու սննդի արդ–յան մեջ։ Նախքան համեմունքի վերածելը Վ-ի պտուղները մշակում են։ Խոհարարության մեջ օգտագործում են շաքարի փոշու հետ խառնած Վ-ի ալյուրը։

ՎԱՆԻԼԻՆ, արոմատիկ ալդեհիդ։ Յուրահատուկ հոտով, անգույն բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 81–83°C։ Պարունակվում է *վանիլի* պտուղներում։ Սինթեզում են գվայակոլից և լիգնինից։ Վ. բուրավետ նյութ է սննդի և օծանելիքի արդ–յան մեջ։ Վ-ի խառնուրդը շաքարի փոշու հետ (1:100) անվանում են վանիլ. շաքար։




ՎԱՆԻԿՅԱՆ Գեղամ (1889–1915), հաս. գործիչ։ 1904–ից՝ Հնչակյան կուս–յան անդամ։ 1909-ին մի խումբ երիտասարդների հետ հիմնադրել է «Կայծ» երիտասարդ. միությունը։ 1911–ից՝ «Կայծ» ամսագրի հիմնադիր–խմբ.։ Նահատակվել է Մեծ եղեռնի ժամանակ՝ կախաղան բարձրացվելով՝ Փարամազի խմբով, 19 հնչակյանների հետ։

ՎԱՆՆ, հնչյուն. շղթայի արտաբերության նվազագույն միավորը, որ կազմվում է մեկ կամ մի քանի հնչյուններից և ընկալվում որպես մեկ հնչական միասնություն։ Հայ–ում Վ-ի կազմավորման համար անհրաժեշտ է մեկ վանկարար ձայնավոր։ Տարբերում են Վ–ի բաց (օր.՝ ա–ռու, գի–նի ևն), փակ (օր.՝ ար–ծիվ, պատ–կեր ևն) և գաղտնավանկ (օր.՝ կայ–սըր, ար–կըղ, գըր–կել, թըր–չել) տեսակները։

ՎԱՆԿԱՐԵՄ, հրվանդան Չուկոտի թ–կղզու հս–արմ–ում։ Գլխ. բնակավայրը՝ Վանկարեմ։ 1934-ին Վ. «Չելյուսկին» շոգենավի արշավախմբի մասնակիցներին փրկած խորհրդ. օդաչուների հենակետն էր։ Գործում է բևեռ. կայան (1934–ից)։

ՎԱՆԿԵԼԻ ՇԱՐԺԻՉ, ներքին այրման մխոցագլան. շարժիչ, որի կառուցվածքը 1957-ին մշակել է գերմանացի ճարտարագետ Ֆ. Վանկելը (F. Wankel, 1902–1988)։ Վ. շ–ում եռանիստ ռոտորը (մխոց) պտտվում է հատուկ պրոֆիլի գլանում (նկ.)։ Ռոտորի նիստերը հատում են խցիկի փոփոխ. ծավալները, որոնցում տեղի են ունենում նաշ–ի համար սովոր. շարժընթացներ։ Նույն հզորության դեպքում Վ. շ–ի չափերը 2–3 անգամ փոքր են մխոց. շարժիչի չափերից։



Վանկելի շարժիչի սխեման թողարկման դիրքում. 1. ռոտոր, 2. լիսեռ, 3. իրան, 4. վառոցքի մոմ, 5. գլան, I ներծծում, II սեղմում, III ընդարձակում, IV թողարկում (արտամղում)

ՎԱՆԿՈՒՎԵՐ (Vancouver) Ջորջ (1757–1798), անգլիացի ծովագնաց։ Մասնակցել է Ջ. *Կուկի* 2-րդ և 3-րդ գիտարշավներին (1772–79)։ 1790–95-ին ղեկավարել է շուրջերկրյա գիտարշավ, ուսումնասիրել է Հս. Ամերիկայի խաղաղօվկիանոս. ափամերձ հատվածը։ Վ-ի անունով կոչվել են կղզի և քաղաք։

ՎԱՆԿՈՒՎԵՐ, կղզի Խաղաղ օվկ–ում՝ Հս. Ամերիկայի ափի մոտ (Կանադա)։ Տարածքը՝ 32,2 հզ. կմ², բն.՝ 759,3 հզ. (2011)։ Բարձր.՝ մինչև 2000 մ։ Տարածված են ասեղնատերև անտառները։ Գլխ. ք–նվինգստո–ը՝ *Վիկտորիա*։ Կոչվել է Ջ. *Վանկուվերի* անունով։

ՎԱՆԿՈՒՎԵՐ, ք–նվինգստո Կանադայում՝ Խաղաղ օվկ–ի ափին։ Բն.՝ շուրջ 2 մլն

(արվարձաններով, 2010)։ Անվանվել է Ջ. *Վանկուվերի* պատվին։ Վ.-ում անցկացվել են XXI ձմեռ. օլիմպ. խաղերը (2010)։

ՎԱՆՅԱՆ Ալբերտ Անդրանիկի (ծ. 1932), մանկ. վիրաբույժ։ Բժշկ. գիտ. դ-ր (1974), պրոֆ. (1975)։ ՀՀ-ում առաջինն է (աշխատակիցների հետ) իրականացրել երեխաների մի շարք եզակի ու բարդ վիրահատություններ, մշակել ու գործնականում ներդրել է բրոնխադիտման, կերակրափողադիտման, փայծաղադրունքագրության (սպլենոպորտոգրաֆիա) և այլ եղանակներ։

ՀՀ «Մխիթար Հերացի» մեդալ (2000)։

ՎԱՆՅԱՆ Լեոնիդ Լևի (ծ. 1932), երկրաֆիզիկոս։ Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1964), պրոֆ. (1975)։ Աշխ-ները վերաբերում են էլեկտրամագնիս. զոնդավորման և բնական էլեկտրամագնիս. դաշտերի փոփոխման բնույթի հարցերին։

ՎԱՆՅԱՆ Հրանտ Անուշավանի (1911–1980), ճարտարագետ-մեխանիկոս։ Տեխ. գիտ. դ-ր (1971), պրոֆ. (1972)։ Աշխ-ները վերաբերում են քարքարոտ հողերի յուրացման և քարահավաք մեքենաների աշխ. հանգույցների մշակման հարցերին։

ՎԱՆՅԵ–ՄՈՏՏԻ ԷՔՍԻՏՈՆ, քվազիմասնիկ կիսահաղորդչում, որն էլեկտրոնի և խոռոչի կապված վիճակն է. առաջանում է կուլոնյան փոխազդեցության շնորհիվ։ Վ.-Մ. է. կարելի է դիտարկել որպես ջրածնանման քվազիատոմ կամ էլեկտրոնի և պոզիտրոնի կապված վիճակ՝ *պոզիտրոնիում*, քանի որ այն անկայուն է։ Վ.-Մ. է. առաջացնող էլեկտրոնը և խոռոչը կարող են անհիիլացվել՝ ֆոտոն առաքելով։

ՎԱՆՆԻԿՈՎ Բորիս Լվովիչ (1857–1962), ռուս պետ. գործիչ, ճարտարագիտահերետան. ծառայության գեն.-գնդ. (1944)։ Սոց. աշխ. հերոս (1942, 1949, 1954)։ 1939–41-ին՝ ԽՍՀՄ պաշտպ. արդ-յան, 1942–46-ին՝ զինամթերքի ժողկոմ։

ՎԱՆՆՈՎՍԿԻ Պյոտր Սեմյոնովիչ (1822–1904), ռուս պետ. գործիչ, հետևազորի գեն. (1883)։ Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. անդամ (1888)։ 1881–97-ին՝ Ռուս. կայսրության ռազմ., 1901–02-ին՝ ժող. լուսավորության նախարար։

ՎԱՆՇԵՆԿԻՆ Կոնստանտին Յակովլևիչ (1925–2012), ռուս. բանաստեղծ։ Հեղինակ է «Լույսի շրջապտույտներ» (1965), «Ուղևորություն ընկերոջ մոտ» (1971), «Ճանապարհային նշան» (1977), «Ճյուղը» (1981), «Նախանշան» (1987), «Ալիքավոր ապակի» (2000) բանաստեղծությունների ժող-ների, «Մարդու կյանքը» (1980) պոեմի, նաև հուշերի («Ինքս իմ որոնումներում», 1985, «Գրողների ակումբ», 1998), երգերի տեքստերի։

ԽՍՀՄ (1985), ՌԴ (2001) Պետ. մրց-ներ։

ՎԱՆՉՈՒՐԱ (Vančura) Վլադիսլավ (1891–1942), չեխ գրող։ Հեղինակ է սոցիալ-քննադատ. և հակառազմ. թեմաներով «Հացթուխ Յան Մարգոուլը» (1924), «Հերկի ու կովի դաշտը» (1925), «Երեք գետ» (1936) վեպերի, «Պատկերներ չեխ ժողովրդի կյանքի» (հ. 1–2, 1939–40, անավարտ) հակաֆաշիստ. գեղ. վավերագրության, նաև դրամաների, սցենարների։ Եղել է Դիմադրության շարժման կազմակերպիչներից։ Գնդակահարվել է։

ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, առաջինը 1857-ին Վարագա վանքում *Խրիմյան* Հայրիկի հիմնադրած «Արծիվ Վասպուրականի» տպարանն է (1855–56-ին գործել է Կ. Պոլսում)՝ ժառանգավորաց վարժարանին կից (տպագրել է «*Արծուի Վասպուրական*» ամսաթերթը (ն)։ 1892–1908-ին կառ-յունը տպարանը բռնագրավել է, վերաբացվելուց հետո գործել է մինչև 1915-ը։ Վան ք-ում գործել են հայկ. 6՝ «Ժամկոչյան» (1908-ից), «Բարսեղյան» (1910-ից), ««Վան-Տոսպի» և Հովնանյանի» (1911-ից), «Աշխատանք» (1911-ից) շաբաթաթերթի, Երիտասարդաց քրիստ. ընկերակցության (տպագրել է «*Վան-Տոսպ*» ամսաթերթը (ն)), «Տ. Մելքիսեդյան բարեսիրական-բարեսիրաց» (1912-ից) տպարանները։ Վանում լույս են տեսել նաև շուրջ 1 տասնյակ պարբ-ներ։ Հայկ. տպագրություն եղել է նաև Շատախում, Գավաշում, Ռշտունիքում։

ՎԱՆՏ ՀՈՖՖ (van 't Hoff) Յակոբ Հենդրիկ (1852–1911), նիդեռլանդացի քիմիկոս։ Տարածաքիմիայի և ֆիզ. քիմիայի հիմնադիրներից։ Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1895)։ Լոնդոնի թագավոր. ընկ-յան արտ. անդամ (1897)։ Նիդեռլանդների, Ամերիկայի, Ֆրանսիայի ԳԱ անդամ։ Ձևակերպել է (1874) մոլ-ներում ատոմների տարած. դասավորության տեսությունը։ Բացահայտել է քիմ. կինետիկայի և լուծույթներում օսմոտիկ. ճնշման օրենքները։ Աշակել է (1886–89) նոսրացրած լուծույթների քանակ. տեսության հիմունքները։ Նոբելյան մրց. (1901)։

ՎԱՆՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, երկրաչափորեն անփոփոխ կախովի կառուցվածքներ, որոնց հիմն. կրող տարրերը ճկուն, ձգված, նախապես լարված ճոպաններն են (վանտեր)։ Տարրերում են հարթ (հիմնականում՝ վանտային կամուրջներ) և տարած. (մեծ թռիչքներով հաս. և արդ. շենքերի ծածկույթներ) Վ. կ։

«ՎԱՆ-ՏՈՍՊ», գր., գիտ., հաս-քաղ. պարբերաթերթ (1911–19, Վան, ապա՝ Թիֆլիս, Երևան)։ Սահմանադիր ռամկավար ազատ. կուս-յան կենտր. խորհրդի հրտ-յուն։ Խմբ-ներ՝ Հովհաննես Ավագյան, Նշան Հակոբյան, Տիգրան Նազարյան, Վարդան Պապիկյան, Արտակ Դարբինյան, Հովհաննես Հակոբյան։

ՎԱՆՏՈՒԶ (ֆրանս.՝ ventous, < լատ. ventosus – հողմային), 1. փական, որի միջով ավտոմատ հեռանում է ջրմուղ., ջեռուցման և այլ գծերի վերին կետերում կուտակվող օդը։ 2. Կոյուղային հոսքերի մաքրման հարմարանք՝ փայտե կամ պլաստմասսայե բռնակով սնամեջ ռետինե կիսագունդ։

ՎԱՆՑՅԱՆ Անուշավան Արիստակեսի (ծ. 1951), մեխանիկոս։ Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1998), պրոֆ. (1998)։ ՌԲՆԳԱ ակադ. (1995)։ Հայտնաբերել է (1978–80) զրահի պաշտպանունակության մեծացման էլեկտրադինամիկ. եղանակ և խոնավ գետնահողերի մեջ էլեկտրահաղորդիչ ցցերի և խողովակների մխրճման վրա էլեկտրամագնիս. դաշտի ազդեցության երևույթը (1996)։

ՀՀ ԳԱԱ 2-րդ մրց. (1990), ՌԲՆԳԱ Վեռնադսկու անվ. ոսկե մեդալ (2012)։

ՎԱՆՑՅԱՆ Գրիգոր Խաչատուրի (1870–1908), լեզվաբան, բառարանագիր։ Հեղինակ է «Հայ բոշաներ» («Մուրճ», 1892, № 7–9), «Հայ հեղինակներ» (1905) քրեստոմատիայի, «Պատմական քերականութիւն արևելահայ լեզուի» (1906) և այլ աշխ-ների։

ՎԱՆՑՅԱՆ Էդուարդ Մկրտչի (1921–1989), վիրաբույժ։ Բժշկ. գիտ. դ-ր (1964), պրոֆ. (1965)։ ԽՍՀՄ ԲԳԱ թղթ. անդամ (1975)։ Առաջարկել է կերակրափողի ամբողջ. և հատված. պլաստիկայի մեթոդ։ Աշակել է կերակրափողի նեղացման և սրտի կծկանքի պահպանող. բուժման հատուկ օդալայնիչ։ Ցան Պուրկինեի արծաթե մեդալ և պատվո դիպլոմ (Չեխոսլովակիա)։

ՎԱՆՑՅԱՆ Վաչագան Հունանի (1913–1944), սերժանտ։ ԽՄ հերոս (1945, հետմահու)։ ՀՄՊ-ում եղել է գնդացրորդ։ Հերոսի կոչման արժանացել է 1944-ի հունիսի 29-ին Մեմել գետի աջ ափին հենակետը գրավելու ժամանակ ցուցաբերած անձնազոհության համար։

ՎԱՆՈՒԱ ԼԵՎՈՒ (Vanua Levu), հրաբխ. կղզի Խաղաղ օվկ-ում՝ Ֆիջի կղզիների խմբում։ Տարածքը՝ 5,5 հզ. *կմ²*, բն.՝ 136 հզ. (2007)։ Բարձր.՝ մինչև 1031 *մ*։ Կան հանգած հրաբուխներ։ Գլխ. քաղաքը՝ Լամբասա։

ՎԱՆՈՒԱՏՈՒ (Vanuatu), **Վանուատուի Հանրապետություն**, կղզային պետություն Խաղաղ օվկ-ում։ Տարածքը՝ 12,4 հզ. *կմ²*, բն.՝ 261 հզ. (2015)։ Մայրաքաղաքը՝ *Պորտ Վիլա*։ Պետ. լեզուները՝ անգլ., ֆրանս., բիսլամա։ Կառավարման ձևը՝ խորհրդարանահանրապետ.։ Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը։ Հավատացյալների մեծ մասը երիցական, բողոքական և կաթոլիկ է, կան նաև ավանդ. հավատալիքների հետևորդներ։ Բաժանված է 6 վարչ. պրովինցիաների։ Անդամակցում է ՄԱԳ-ին։ ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 4,2 հզ. ԱՄՆ դոլար է (2013)։ Արտահանում է կոպրա, տավարի միս, կակաո, բնափայտ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք, շինանյութ ևն։ Դրամ. միավորը՝ վատու։

Կղզիները հայտնաբերել է պորտուգալացի ծովագնաց Պ. Կիրոսը 1606-ին, ուսումնասիրել և Նոր Հեբրիդներ է անվանել Ջ. *Կուկը*։ 1906-ից Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի համատեղ կառավարման ներքո էր, 1980-ից՝ անկախ պետություն։

ՎԱՆՈՒՆՑ Էդուարդ Հայկի (ծ. 1929), ինչյուն. օպերատոր։ ՀՀ (1967), ՌԴ (1998) արվ. վաստ. գործիչ։ Հայֆիլմում մասնակցել է «Անձամբ ճանաչում եմ» (1957), «Բարև, ես եմ» (1965), «Նռան գույնը» (1969) և այլ ֆիլմերի ստեղծմանը։ 1968-ից՝ Լենֆիլմի ինչյուն. օպերատոր («Լիր արքա», 1971, «Գոյա», 1972, «Ռաֆերտի», 1980, «Սպիտակը և Սևը», 1991, Մ. Կարմանովի հետ, «Էլիքսիր», կարժամետրաժ, 1995, «Վաղենակի ծաղիկները», գեղ., 1997, ևն)։

ՎԱՇԻՆԳՏՈՆ (Washington) Ջորջ (1732–1799), ԱՄՆ-ի 1-ին նախագահ՝ 1789–97-ին։ Յոթնամյա պատերազմի (1756–63) սկզբին, որպես գնդ., գլխավորել է Վիրջինիայի զորքերը։ 1774-ին ընտրվել է 1-ին, 1775-ին՝ 2-րդ Ցամաք. կոնգրեսի կազմում։ *Անկախության պատերազմ Հյուսիսային Ամերիկայում 1775–83*-ին, որպես ապստամբների ԶՈՒ-ի գլխ. հրամ., դրսևորել է զորավարի ու կազմակերպչի մեծ տաղանդ։ 1787-ին Վ.-ի նախագահությամբ մշակվել է ԱՄՆ-ի սահմանադրությունը։

ՎԱՇԻՆԳՏՈՆ, ԱՄՆ-ի մայրաքաղաքը (1800-ից) Ատլանտ. օվկ-ի ափին՝ Պոտոմակ գետի ստորին հոսանքում։ Վարչականորեն համընկնում է Կոլումբիա դաշն. օկրուգի հետ (1878-ից)։ Երկրի քաղ.,

մշակութ. և գիտ. խոշոր կենտրոնն է: Բն.՝ 598 հգ. (արվարձաններով՝ ավելի քան 6 մլն, 2010): Կան սննդի, տպագր., ռազմ. արդ-յան և այլ ձեռն-ներ: Հիմնադրվել է 1791-ին: Կոչվել է ԱՄՆ-ի առաջին նախագահ Ջ. ***Վաշինգտոնի*** անունով: Վ.-ում են Կոնգրեսի գրադարանը (աշխարհում խոշորագույններից), Կապիտոլիումը (Կոնգրեսի շենքը՝ 1793–1865), Սպիտակ տունը (նախագահի նստավայրը՝ 1792–1865), ԱՄՆ-ի ազգ. տիեզերագնացության ու օդագնացության թանգարանները, Ազգ., ինչպես նաև Ֆրիր, Կորկորան, Ֆիլիփս և այլ պատկերասրահներ: Վ.-ի հատակագիծը 1790–93-ին կազմել է ֆրանս. ճարտարագետ Պ. Շ. Լանֆանը:

ՎԱՇԻՆԳՏՈՆ, նահց (42-րդը) ԱՄՆ-ի հարավ.-ում: Տարածքը՝ 176,6 հգ. *կմ*², բն՝. 7,2 մլն (2015): Վարչ. կենտրոնը՝ Օլիմպիա:

«ՎԱՇԻՆԳՏՈՆ ՓՈՍՏ» (“Washington Post” – «Վաշինգտոնյան Փոստ»), ԱՄՆ-ի տնտ., հաս. օրաթերթ (1877-ից, Վաշինգտոն՝ անգլ.):

ՎԱՇԻՆԳՏՈՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ 1921–22, ԱՄՆ-ի, Բրիտ. կայսրության, Բելգիայի, Իտալիայի, Նիդեռլանդների, Ճապոնիայի, Չինաստանի, Պորտուգալիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչների խորհրդաժողով, որը փաստագրել է ԱՀՊ-ից հետո իմպեր. տերությունների միջև ստեղծված ուժերի հարաբերակցությունը Հեռավոր Արևելքում: Գումարվել է ԱՄՆ-ի կառ-յան նախաձեռնությամբ Վաշինգտոնում 1921-ի նոյեմբ. 12-ից 1922-ի փետր. 6-ը: ***Փարիզի հաշտության խորհրդաժողովի (1919–20)*** հետ ավարտել է այսպես կոչված Վերսալ-Վաշինգտոնյան համակարգի ստեղծումը: Խորհրդաժողովի կարևոր փաստաթղթերն էին՝ 1. Չորս տերությունների պայմանագիրը, 2. Հինգ տերությունների պայմանագիրը (1922-ի փետր. 6-ին), 3. Ինը տերությունների պայմանագիրը: Խորհրդ. Հայաստանը մասնակցության հրավեր չի ստացել:

ՎԱՇԽԱՆՈՒԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ, կապիտալի առաջին պատմ. ձևը, որն իր տիրոջը եկամուտ է բերել տոկոսի տեսքով: Բնորոշ է մինչկապիտալիստ. ժամանակաշրջանին, նախորդել է փոխատվ. կապիտալին:

«ՎԱՋԱԳԱՆ ԲԱՐԵՊԱՇՏ», 1. մեղալ, ԼՂՀ պետ. պարգև, որով պարգևատրվում են մշակույթի, գրկ-յան, հումանիտար գիտ-յունների, արվ-ի և առողջապ-յան ոլորտներում մեծ ներդրում ունեցած անձինք: 2. ԼՂՀ ԳՄ հրատարակչատպագր. համալիր: Հիմնադրվել է 2004-ին Ստեփանակերտում: Տնօրեն՝ Ռոբերտ Եսայան:

ՎԱՋԱԳԱՆ Գ ԲԱՐԵՊԱՇՏ (ծ. թ. անհտ–մոտ 510), Արցախի և Ուտիքի թագավոր՝ 480-ական թթ-ի վերջից՝ ***Առանշահիկների*** տոհմից: Ամրապնդելով Արցախ-Ուտիքյան իշխանապետությունը՝ այն հռչակել է թագավորություն: Թագավորանիստ է դարձրել իր հիմնադրած Դյուտական ավանը (Տրտուի ափին): Կառուցել է բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ, բացել դպրոցներ: Թագավորության վարչ. հիմքերն ամրապնդելու նպատակով ձեռնամուխ է եղել ներքին կարգ ու կանոնն ապահովող օրենքների մշակմանը: Վ. Գ Բ. կազմել է «Սահմանադրութիւն կանոնականը», որը հաստատվել է Աղվենի եկեղեց. ժողովում:

ՎԱՋԵ, Արցախի և Ուտիքի գահերեց իշխան V դ-ում: ***Առանշահիկների*** տոհմից: Հայկ. աղբյուրներում հաճախ անվանվում է «Աղվանից թագավոր»: Ամուսնացել է Սասանյան արքա ***Հազկերտ II***-ի քրոջ դստեր հետ: Պերոզ արքայի (459–484) հրամանով կառուցել Պարտավ (Պերոզապատ) ք-ն: Այնուհետև չհանդուրժելով Պերոզի սաստկացող բռնատիրությունը՝ ապստամբել է, հրաժարվել գրադաշտականությունից և երկրից դուրս քշել պարսիկներին: Մեկամյա կռիվներից հետո Պերոզը ստիպված հաշտվել է Վ.-ի անկախության հետ: Այնուհետև Վ. հեռացել է (մոտ 464-ին) աշխարհիկ կյանքից և զբաղվել քարոզչությամբ:

ՎԱՋԵ Ա. (ծ. թ. անհտ–1232/35), ռազմ. և պետ. գործիչ: ***Վաչուտյանների*** իշխան. տան հիմնադիրը: Ծառայել է ***Զաքարե Բ*** և ***Իվանե Ա. Զաքարյանների*** բանակում, XIII դ-ի սկզբին նրանցից ստացել է սելջուկ-թուրքերից ազատագրված Արագածոտն գվո-ի արլ. մասը և Նիգ գվո-ը, իշխանաց իշխանի տիտղոսով նշանակվել Արարատյան երկրամասի կողմնակալ:

ՎԱՋԵ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ (ծ. թ. անհտ–մոտ 338), Հայոց սպարապետ: ***Մամիկոնյան*** տոհմի նահապետ: Վ. Մ. նախ Արագածոտն գվո-ի Ցլու գլուխ լ-ան, ապա Օշականի ճակատամարտերում հաղթել է Հայոց գահի հավակնորդ Սանեսան Արշակունուն և գլխատել նրան: 337-ին Առեստ ավանի (Վանա լճի հս-արլ. ափին) մոտ պարտության է մատնել Հայաստան ներխուժած պարսկ. զորքերին: Զոհվել է Պարսից Շապուհ II արքայի դեմ մղած ճակատամարտերից մեկում:

ՎԱՋՈՒՏՅԱՆՆԵՐ, իշխան. տոհմ Հայաստանում՝ XII–XIV դդ-ում: Կոչվել է հիմնադիր ***Վաչե Ա***-ի պապի՝ Վաչուտի անունով: Զաքարյանների բանակում ռազմ. ծառայությունների համար Վաչե Ա-ն XIII դ-ի սկզբին նրանցից ստացել է իշխանաց իշխանի կոչում և տիրույթներ (Արագածոտն գվո-ի արլ. մասը, Նիգ գվո-ը), նշանակվել Արարատյան երկրամասի կողմնակալ: Աչքի են ընկել նաև իշխաններ Վաչե Ա-ն, Քուրդ Ա-ն, Վաչե Բ-ն, Քուրդ Բ-ն: 1350-ական թթ-ին Չոբանյան Մելիք Աշրաֆի ապստամբությունների հետևանքով Վ. կորցրել են իրենց իշխանությունը:

ՎԱՊՅԱՐՈՎ Նիկոլա (1909–1942), բուլղար բանաստեղծ: Հեղինակ է «Շարժիչի երգերը» (1940) բանաստեղծությունների ժող-ի: Գնդակահարվել է:

ՎԱՌԵԼԻ-ՔՎԱԼԻՖԻԿԱՑԻՈՆ ՊԱՇԱՐՆԵՐ (առաջնային), տարբեր տեսակի վառելանյութի և էներգիայի (նավթարդ-յան, գազի, ածխի, տորֆի և թերթաքարի արդ-յան արտադրանքը, ատոմ. և ջրի էլեկտրաէներգիան, նաև տեղ. վառելանյութի տեսակները) համախումբը, որն ունի երկիրը՝ արտադր., կենցաղ. և արտահանման պահանջները բավարարելու համար:

ՎԱՌԼԱՄ (մոտ 1590–1657), մետրոպոլիտ, Մոլդովայի գրատպության հիմնադիրը («Կազանիա», 1643, ևն): Յասսիում Սլավոնա-հունա-լատ. ակադ-ի (1640) հիմնադիրներից:

ՎԱՌԼԱՄՈՎ Ալեքսեյ Նիկոլաևիչ (ծ. 1963), ռուս գրող, բանասեր: 2016-ից՝ Մոսկվայի Մ. Գորկու անվան գրկ-յան ինստ-ի ռեկտոր: Հեղինակ է «Ծնունդ» (1995) վիպակի, «Փշատենի» (1995), «Սեպտեմբերի 11-ը» (2003) վեպերի, նաև պատմվածքների, XX դ-ի ռուս գրկ-յան վերաբերյալ աշխ-յան, կենսապատում-ների ևն:

ՎԱՌԼԱՄՈՎ Լեոնիդ Վասիլիչ (1907–1962), ռուս. կինոռեժ.: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1950): Նկարահանել է «Կետերի մարտը» (1935), «Օդաչուներ» (1938), «Գերմանական զորքերի ջախջախումը Մոսկվայի մերձակայքում» (1942, Ի. Կոպալինի հետ), «Ստալինգրադ» (1943), «Հարավսլավիա» (1946), «Լեհաստան» (1948), «Կոնգոն պայքարում» (1960) և այլ վավերագր. ֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942, 1943, 1947, 1949, 1951):

ՎԱՌՆԱ, ք-նվինգստ Բուլղարիայում (տարեկան բեռնաշրջանառությունը՝ շուրջ 8,5 մլն *տ*), համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 327,4 հգ. (2010): Խոշոր տրանսպորտ. հանգույց է, ունի օդանավակայան: Ծովամերձ առողջարան. շրջանի (Ոսկե ավազներ, Ալբենա ևն) կենտրոնն է: Հայտնի է մ. թ. ա. VI դ-ից՝ որպես հինհուն. Օսեսոս գաղութ: Կան անտիկ և վաղբյուզ. շրջանի քաղաքի ավերակներ:

ՎԱՌՆԱԼԻՍ (Varnalis) Կոստաս (1884–1974), հույն գրող: Հեղինակ է սոցիալ-հեղ. թեմատիկայով «Այրող լույսը» (1922), «Պաշարված ստրուկներ» (1927) բանաստեղծությունների ժող-ների, «Ամոր-ձատված ժողովուրդ» (1923), «Սովրատի ճշմարիտ պաշտպանականը» (1931, հայ.՝ 1963) երգիծ. պամֆլետ-վիպակների, քաղ. ֆելիետոնների, գրաքննադատ. նյութերի: Լենինյան միջազգ. մրց. (1958):

ՎԱՌՈ Մարկուս Տերենտիուս (Marcus Terentius Varro, մ. թ. ա. 116–27), հռոմեացի գրող, հանրագիտակ: Հեղինակ է «Հին սովորույթները ժողովրդի կենցաղում և պաշտամունքային ծիսակատարություններում», «Պատկերներ» կամ «Յոթնյակներ» (700 դիմանկար), «Մենիպյան ծաղրապատկերներ», «Գյուղատնտեսության մասին» և այլ երկերի:

ՎԱՌՈՂՆԵՐ, պինդ նյութեր կամ դրանց խառնուրդները, որոնք ունակ են կայուն շերտ առ շերտ այրման՝ բարձր ջերմատիճանի մեծաքանակ գազեր անջատելով: Հրազենում օգտագործում են որպես էներգիայի աղբյուր: Վ. լինում են առանձին միացությունների (հիմնականում՝ բջջանյութի նիտրատների)՝ այսպես կոչված՝ ***անծուխ վառոդ,*** և վառելանյութից ու օքսիդիչից կազմված խառնուրդների հիմքով: Վերջիններից են ծխացող Վ. (ածխի, ծծմբի և կալիումի նիտրատի խառնուրդներ) և հրթիռ. պինդ վառելանյութերը:

ՎԱՌՎԱՌԻԿ, կաղամբազգիների (խաչածաղկավորներ) ընտանիքի միամյա և բազմամյա խոտաբույսերի, երբեմն՝ կիսաթփերի ցեղ: Հայտնի է մոտ 150 տեսակ, ՀՀ-ում՝ 15՝ գրեթե բոլոր մարզերում: Հայկ. լ-աշխարհի բնաշխարհիկ է, իսկ դեղնապտուղ Վ. գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՎԱՌՈՒՆԱ, ամենատես և ահարկու աստված-դատավոր, երկնքի և ջր. տարերքի աստվածը վեդայական կրոնում: Վ. ***Ինդրայի*** հետ գլխավորել է պանթեոնը:

ՎԱՍԱԼ, ավատատեր միջնադար. Արմ. Եվրոպայում, որը որպես ավատ հող էր ստանում այլ ավատատիրոջից (սենիորից)՝ պարտավորվելով վերջինիս համար կատարել զինծառայություն (40 օր՝ տարվա մեջ), մասնակցել ավատ. կուրիային (խորհրդին) ևն:

ՎԱՍԱԿ Ա. (ծ. թ. անհտ–1040), Սյունիքի թագավոր՝ 998–ից: Հաջորդել է հորը՝ *Սմբատ Ա. Սահակյանին*: Ընդունել է *Գագիկ Ա.*-ի գերագահությունը, մասնակցել նրա փառհոսյան արշավանքին (1003): Ճնշել է Սյունիքում բռնկած գյուղաց. շարժումները:

ՎԱՍԱԿ ԱՐԾՐՈՒՆԻ, Մահկանաբերդի իշխան, Տփղիսի շահապ (քաղաքապետ) XII դ–ում: Կարինի Սալդուխ ամիրայից, որպես պարգև, տիրույթներ է ստացել Կարինում: Սերտ հարաբերություններ է ունեցել Վրաց Դավիթ V թագավորի հետ: Վերջինիս հաջորդած Գեորգի III թագավորը (1156–84) հալածել է Վ. Ա.-ուն, և նա ստիպված հեռացել է Կարինի իր տիրույթները:

ՎԱՍԱԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, VIII դ–ի իշխան: *Աշոտ Բագրատունու* որդին: Մասնակցել է Արճեշի 775–ի ճակատամարտին: Արաբ. խալիֆության պարտությունից հետո հաստատվել է Կղարջքի Արտանուջ ամրոցում: Վ. Բ–ու որդի Ատրներսեհը և թոռը՝ Աշոտը, ընդունելով քաղկեդոնականություն, դարձել են Բագրատունիների վրաց. ճյուղի արքայատան հիմնադիրները: Պատմիչ *Վարդան Արևելցին* Վ. Բ–ուն է համարում վրաց Բագրատունիների հիմնադիրը:

«ՎԱՍԱԿ ԻՇԽԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆ», «Վասակ արքաեղբոր Ավետարան», 1270–ական թթ–ի պատկերազարդ ձեռագիր մատյան (Երուսաղեմի մտնդ., ձեռ. № 2568): Ընդօրինակվել (գրիչ՝ Ավետիս) և պատկերազարդվել է Կիլիկիայի Հայոց Հեթում Ա արքայի եղբոր՝ Վասակ իշխանի պատվերով: Նրա համար Ավետիս գրիչն ընդօրինակել է նաև «Վասակի Ավետարանը» (Վաշինգտոնի Ֆրիր պատկերասրահ, ձեռ. № 32.18), որի պատկերազարդումը վերագրվում է *Թորոս Ռոսլինին*: «Վ. ի. ա.»–ում պահպանվել են Ա և Ժ կանոնների խորանները, ավետարանիչների պատկերները, անվանաթերթերը, տերուն. մանրանկարները, նաև 10 լուսանցանկար:

ՎԱՍԱԿ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ, Վասակ զորավար (ծ. թ. անհտ–368), Հայոց սպարապետ՝ մոտ 350–ից: Սերտորեն համագործակցել է *Արշակ Բ*-ի հետ: Հայկ. 60–հզ–անոց զորաբանակը Վ. Մ–ի առաջնորդությամբ 364–ի գարնանը պարտության է մատնել պարսկ. զորաբանակին և դուրս մղել երկրից: Պարսից Շապուհ II արքան Տիզբոնն է հրավիրել Արշակ Բ–ին ու Վ. Մ–ին և ձերբակալել նրանց: Վ. Մ. մորթազերծ է արվել, իսկ Արշակ Բ–ն բանտարկվել է Խուժիստանի Անհուշ բերդում, որտեղ էլ մահացել է:

ՎԱՍԱԿ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ, Վասակ Հոլում (ծ. թ. անհտ–1021), Հայոց սպարապետ: *Վահրամ Պահլավունու* եղբայրը, *Գրիգոր Մագիստրոս Պահլավունու* հայրը: Տիրել է Բջնիին և Նիգ գվո–ին: 1021–ին, Քասախ գետի ափին, Վ. Պ. պարտության է մատնել Ատրպատականից Հայաստան ներխուժած դելմիկներին և ստիպել նահանջել: Ջոհվել է մարտում:

ՎԱՍԱԿ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ (ծ. թ. անհտ–1077), իշխան և զորավար: *Գրիգոր Մագիստրոս Պահլավունու* որդին: Պատանի հասակում հոր հետ տեղափոխվել է Հս. Միջագետք, ընդունել բյուզ. հպատակություն: 1060–ին կարգվել է Անտիոքի դուքս: Սպանել են բյուզանդացի զինվորները:

ՎԱՍԱԿ ՍՅՈՒՆԻ (387–454/455), Հայոց մարզպան՝ 441–451–ին: *Անդովկ Սյունու* թոռը, Բաբիկի որդին: Պատանի հասակում պատանդ է եղել Պարսից Սասանյանների արքունիքում: Հոր մահից հետո վերադարձել է հայրենիք: 420–ական թթ–ին աջակցել է *Մեսրոպ Մաշտոցին*՝ Հայաստանի արլ. նահանգ–ներում հիմնադրելու դպրոցներ: 440–ին. նշանակվել է Վրաց, ապա՝ Հայոց մարզպան: Պարսից Հազկերտ II արքայի՝ հայերին զրադաշտականություն պարտադրելու մասին հրովարտակի մերժող. պատասխանին մասնակցելու (449–ի Արտաշատի ժողով) համար այլ երևելի նախարարների հետ կանչվել է Տիզբոն՝ պատասխանատվության: Առերես հավատուրացության և որդիներին (Բաբիկին ու Ատրներսեհին) պատանդ թողնելու գնով վերադարձել է Հայաստան: 449–451–ին երկրում ծավալված ժողովրդապատգամ. շարժման (*Վարդանանց պատերազմ*) ժամանակ Վ. Ս. վարել է այն կանխելու և արյունահեղ կռվից խուսափելու քաղ–յուն: Չհասնելով արդյունքի՝ վճռական պահին լքել է ապստամբներին և իր կողմնակից մի քանի նախարարների հետ անցել պարսիկների կողմը: 451–ի Ավարայրի ճակատամարտից հետո կանչվել է Տիզբոն, ձերբակալվել և տանջամահ արվել մահապարտների բանտում:

ՎԱՍԱԿԱՇԱՏ, Վասակակերտ, Վասակաբերդ, ամրոց Սյունիք նահանգ–ի Ծղուկք գավ–ում: Հավանաբար հիմնադրել է Հայոց մարզպան *Վասակ Սյունին*: X դ–ում հիշատակվում է Վասակակերտ անունով: Ավերակները պահպանվել են ՀՀ Սիսիան շրջանի Հացավան գ–ի հս. կողմում՝ 2 գետակների միջակա բարձունքի վրա:

ՎԱՍԱՋԵ Ակակի Ալեքսիի (1899–1978), վրացի դերասան, ռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1936): 1920–ից՝ Թիֆլիսի Շ. Ռուսթավելու անվ. վրաց. թատրոնի դերասան (Ֆրանց Մոոր՝ Ֆ. Շիլլերի «Ավազակներ», Կիկվիձե՝ Վ. Ա. Դարասելիի «Կիկվիձե», Պեպո, Ջիմզիմով՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», ևն): Նկարահանվել է կինոյում: ԽՍՀՄ (1942, 1946, 1951), ՎԽՍՀ Շ. Ռուսթավելու անվ. (1974) Պետ. մրց–ներ:

ՎԱՍԵՐԲԵՐԳ (Wassberg) Թոմաս (ծ. 1956), շվեդ մարզիկ (դահուկավազք): Ձմեռ. օլիմպ. խաղերի քառակի (1980, 1984, 1988), աշխարհի եռակի (1982–87) չեմպիոն:

ՎԱՍԵՐՄԱՆ (Wassermann) Ավգուստ (1866–1925), գերմանացի բակտերիաբան և վիրուսաբան: Աշակել է (1906, Ա. *Նեյսերի* հետ) սիֆիլիսի շճախտորոշման մեթոդ (Վ.–ի ռեակցիա):

ՎԱՍԻԼ I Սակեդոնացի, **Բարսեղ I** (813–886), Բյուզանդիայի կայսր՝ 867–ից: Մակեդոն. (Հայկ.) հարստության հիմնադիրը: Ծառայել է բյուզ. արքունիքում՝ որպես ձիապան և իր փայլուն ընդունակությունների շնորհիվ դարձել սենեկապետ: Գահին տիրելու համար սպանել է կեսար Վարդասին և կայսր Միքայել III–ին: Վ. I–ի օրոք վերամշակվել է Հուստինիանոսի օրենսգիրքը, ծավալվել շին–յուն: Բարեկամ. հարաբերություններ է հաստատել *Աշոտ Ա.* Բագրատունու հետ, ճանաչել հայ Բագրատունիների թագավորությունը: 879–ին Կ. Պոլսի եկեղեց. ժողովում հռչակել է Արլ. ուղղափառ եկեղեցու անկախությունը Հռոմից:

ՎԱՍԻԼ II Բուլղարասպան, Բարսեղ II (957–1025), Բյուզանդիայի կայսր՝ 976–ից: Մակեդոն. (Հայկ.) հարստությունից: Վ. II–ի անչափահասության տարիներին Բյուզանդիայի գահին հաջորդաբար տիրել են Նիկեփորոս II Փոկասը և Հովհաննես I Ձմշկիկը: Վերացրել է (1018) Բուլղ. պետությունը (15 հզ. բուլղար ռազմագրիների կուրացնել տալու պատճառով ստացել է «Բուլղարասպան» մականունը): 1000–ին կայսրությանն է կցել Տայքի կյուրապաղատությունը:

ՎԱՍԻԼ ՄԱՐԱՋԱԽՑ, XIV դ–ի 2–րդ կեսի և XV դ–ի սկզբի քաղ. գործիչ, գրիչ: Կիլիկիայի Թորոս Կապանցի իշխանի որդին: *Կոստանդին Ե*-ի սպանությունից (1373) հետո դարձել է պետության 4 խնամակալներից: 1375–ին Սսի գրավումից հետո գերվել է, փոխադրվել Կահիրե, ծառայել եգիպտացիներին: Պահպանվել է Վ. Մ–ի ընդօրինակած ժամանակագր. մի ձեռագիր (Բրիտ. թանգարան, Or. 5458), որտեղ զետեղել է նաև իր կազմած 1382–1404–ի համառոտ ժամանակագրությունը:

ՎԱՍԻԼԵՎ Բորիս Լվովիչ (1924–2013), ռուս գրող, դրամատուրգ, սցենարիստ: Հեղինակ է ՀՄՊ–ի մասին «Իսկ արշալույսներն այստեղ խաղաղ են» (1969, հայ.՝ 1982, կինոնկար՝ 1972), «Յուցակներում չէր նշված» (1974), «Մի կրակեք սպիտակ կարապների վրա» (1973, կինոնկար՝ 1980), «Վաղը պատերազմ էր եղել» (1984, կինոնկար՝ 1987) վիպակների, ստալինյան բռնաճնշումների զոհերի մասին «Բարևներ քեզ Լերայից» (1988) վեպի, «Եղելություններ և չեղելություններ» (գիրք 1, 2, 1977, 1980), «Տունը, որ կառուցել է Պապը» (1991) պատմավեպերի, նաև պիեսների, պատմվածքների, սցենարների, հրապարակախոս. նյութերի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1975):

ՎԱՍԻԼԵՎ Ստանիսլավ Նիկոլաևիչ (ծ. 1946): Ինքնաշխատ կառավարման և մաթ. կիբեռնետիկայի բնագավառի ռուս գիտնական: ՌԳԱ ակադ. (2006): Աշխ–ները վերաբերում են համակարգերի մաթ. տեսությանը, համակարգ. վերլուծությանը, մարդ–մեքենա համակարգերում լուծումներ ընդունելու ընթացակարգի մշակմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1984):

ՎԱՍԻԼԵՎ Վալերի Իվանովիչ (ծ. 1949), ռուս մարզիկ (տափօղակով հոկեյ): ԽՍՀՄ ս. վ. վ. (1973): Մոսկվայի «Դինամո» թիմի պաշտպան (1967–84): Ձմեռ. օլիմպ. խաղերի (1972, 1976), աշխարհի և Եվրոպայի (1970, 1973–75, 1978–82) չեմպիոն:

ՎԱՍԻԼԵՎ Վլադիմիր Վիկտորովիչ (ծ. 1940), բալետի ռուս. արտիստ, բալետմայստեր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1973): Ե. Ս. *Մաքսիմովայի* ամուսինը: 1958–ից (ընդհատումով)՝ Մոսկվայի Մեծ թատրոնի արտիստ (Իվանուշկա՝ Ռ. Կ. Շչեդրինի «Սապատավոր ձիուկը», Շչելկունչիկ–արքայազն՝ Պ. Ի. Չայկովսկու «Շչելկունչիկ», Սպարտակ՝ Ա. Խաչատրյանի «Սպարտակ», ևն), 1995–2000–ին՝ գեղ. ղեկ. (Ս. Մ. Սլոնիմսկու «Իկար», 1971, Կ. Վ. Մոլչանովի «Մակրեթ», 1980, Ս. Ս. Պրոկոֆևի «Մոխրոտը», 1991, ևն): Լենինյան (1970), ԽՍՀՄ (1977), ՌԽՖՍՀ (1984, 1991) Պետ. մրց–ներ:

ՎԱՍԻԼԵՎԱ Վերա Կուզմինիչնա (ծ. 1925), ռուս. դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1986): 1948–ից՝ Մոսկվայի սատիրայի թատրոնի դերասանուհի: Խաղացել է Ն. Մ. Դյակոնովի «Օժիտով հարսանիք», Պ. Բոմարշեի «Խելակորույս օր կամ Ֆիգարոյի ամուսնությունը», Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», Մ. Ա. Բուլգակովի «Մոլիեր»

և այլ պիեսներում, նկարահանվել «Ասք սիբիրյան երկրի մասին» և այլ ֆիլմերում: ԽՍՀՄ Պետ. մրց. (1948, 1951):

ՎԱՍԻԼԵՎՆԵՐ (ազգանվանակիցներ, գրակ. կեղծանունը՝ Վասիլև եղբայրներ), ռուս. կինոռեժ–ներ, սցենարիստներ: 1. **Գեորգի Նիկոլաևիչ Վ.** (1899–1946), ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1940): 2. **Սերգեյ Դմիտրևիչ Վ.** (1900–1959), ԽՍՀՄ ժող. արտիստ (1948): Միասին նկարահանել են «Չապաև» (1934), «Վոլոչայան օրեր» (1937), «Ռազմաճակատ» (1943) ֆիլմերը, Սերգեյ Վ. նկարահանել է «Շիպկայի հերոսները» (1955, խորհրդա–բուլղ.) կինոնկարը: Իրենց ֆիլմերի սցենարիստներն են: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1942):

ՎԱՍԻԼԵՎՍԿԱ (Wasilewska) Վանդա Լվովնա (1905–1964), լեհ գրող: 1939–ից՝ ԽՍՀՄ–ում: Հեղինակ է Լեհաստանի անկախության համար մղվող պայքարին նվիրված «Ձրերի երգը» (1940–51) եռերգության, (1935), «Ծիածան» (1942, ՀՄՊ–ի մասին), «Պարզապես սեր» (1946) և այլ վիպակների:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1943, 1946, 1952):

ՎԱՍԻԼԵՎՍԿԻ Ալեքսանդր Միխայլովիչ (1895—1977), խորհրդ. ռազմ. գործիչ, ԽՍՀՄ մարշալ (1943): ԽՄ հերոս (1944,1945): Մասնակցել է ԱՀՊ–ին: 1942–ի հունիսից՝ ԳՇ պետ և պաշտպ–յան ժողկոմի տեղակալ: 1942–44–ին համակարգել է մի շարք ռազմաճակատների գործողությունները: 1945–ի փետր–ից՝ 3–րդ Բելոռուս. ռազմաճակատի հրամ.: 1945–ի հունիսին նշանակվել է Հեռավոր Արևելքում խորհրդ. զորքերի գլխ. հրամ.: 1946–ից՝ ԳՇ պետ և պաշտպ–յան նախարարի 1–ին տեղակալ, 1949–53–ին՝ ԽՍՀՄ պաշտպ–յան նախարար, 1953–57–ին՝ ԽՍՀՄ պաշտպ–յան նախարարի 1–ին տեղակալ:

ՎԱՍԻԼԻ ԵՐԱՆԵԼՈՒ ՏԱՃԱՐ, **Պոկրովսկի տաճար**, ճարտ. կոթող. հուշարձան Մոսկվայի Կարմիր հրապարակում (1991–ից վերականգնվել է հոգևոր ծառայությունը): Կառուցել են ճարտ–ներ Բարմաև և Իվան Պոստնիկը 1555–61–ին: 8 տաճարները խմբավորված են կենտրոնում 9 սյուներով գմբեթավոր ծավալի շուրջ՝ միավորված ընդհ. հիմքով և ներքին անցումներով:

ՎԱՍԻԼԻ ՇՈՒՅՍԿԻ (1552–1612), Ռուսաստանի ցար՝ 1606–10–ին: Իշխան Ի. Շույսկու որդին: Գլխավորել է ցար *Բորիս Գոդունովի* դեմ ընդդիմությունը, աջակցել *Կեղծ Դմիտրի I*–ին, այնուհետև մասնակցել նրա դեմ դավադրությանը, որի սպանությունից հետո «հռչակվել» է ցար: Պայքարելով լեհ. ինտերվենտների և *Կեղծ Դմիտրի II*–ի դեմ՝ 1609–ին դաշինք է կնքել Շվեդիայի հետ, որի հետևանքով շվեդները ներխուժել են Ռուսաստան: 1610–ի հուլիսին Վ. Շ. գահընկեց է արվել:

«ՎԱՍԻԼԻԿՆԵՐ», «Բազիլիկներ», բյուզ. իրավունքի վերջին կոդիֆիկացիան, ավարտվել է 890–ին՝ Լևոն VI–ի օրոք: Բաղկացած է 60 գրքից: Հիմքում ընկած են հիմնականում Հուստինիանոսի կոդիֆիկացիան, Պրոքեյրոնը (ձեռքի տակ եղած), բյուզ. քաղաքաց., քր., մասնակիորեն՝ դատ. և եկեղեց. իրավունքի որոշ հիմն. ինստ–ների կոդիֆիկացիան, որն իրագործվել է *Վասիլ I*–ի հրամանով, 879–ին՝ որպես ոչ պաշտոն. ժող.:

ՎԱՍԻԼՅԱՆ Արտաշես Արշակի (1898–1943), ռազմ. գործիչ, գնդ. (1940): ՀՄՊ–ի սկզբին Վ–ի գլխավորությամբ կազմավորվել է 409–րդ հայկ. հրաձգ. դիվիզիան. ղեկավարել է նրա զորավարժեցումը: 1942–ին նշանակվել է Հս. Կովկասում գործող 89–րդ հայկ. հրաձգ. դիվիզիայի հրամ.:

ՎԱՍԻՆ Վլադիմիր Ալեքսեևիչ (ծ. 1947), ռուս մարզիկ (ջրացատկ): ԽՍՀՄ ս. վ. վ. (1972): Օլիմպ. խաղերի (1972), ԽՍՀՄ (1966, 1969, 1972) չեմպիոն: Ռուսաստանի ԱՕԿ–ի 1–ին փոխնախագահ (1992–2005), փոխնախագահ (2005–ից):

ՎԱՍԿՈՆՍԵԼՈՍ (Vasconcelos) Խոսե (1882–1959), մեքսիկացի փիլ. և հաս. գործիչ: 1921–24–ին՝ ժող. կրթության նախարար: Վ. ստեղծել է «գեղագիտական մոնիզմի» ուսմունք, որը համարել է հատուկ՝ իբերոամերիկ. աշխարհայացք՝ բնորոշ Լատ. Ամերիկայում ռասաների միախառնման հետևանքով առաջացած հինգերորդ (տիեզ.) ռասային:

«ՎԱՄՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ», ազգ., հաս., քաղ., մշակութ. շաբաթաթերթ (2001–04, Երևան): Հայկ. ժողովրդային շարժման հրտ–յուն: Խմբ.՝ Տիգրան Փաշաբեզյան:

ՎԱՄՆԵՅՈՎ Վիկտոր Միխայլովիչ (1848–1926), ռուս. գեղանկարիչ: Հեղինակ է ժանր. նկարների («Բնակարանից բնակարան», 1876, ևն), ռուս. պատմության, ժող. բիլինաների և հեքիաթների թեմաներով քնար., մոնումենտալ–էպիկ. կտավների («Ճակատամարտից հետո», 1880, «Ալյոնուշկա», 1881, «Դյուցազուններ», 1881–98): Զևավորել է թատեր. ներկայացումներ (Ա. Ն. Օստրովսկու «Ձյունանուշիկ», 1882, 1886), ստեղծել Կիևի Վլադիմիրի տաճարի որմնանկարները (1885–96):

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ (պհլ.՝ vāspuhr – ազնվական, իշխանական և akān – երկիր, բնակատեղի), նինգ Մեծ Հայքում (տարածքը՝ ավելի քան 40 հզ. *կմ*²): Հս–ից սահմանակից էր Այրարատ, հս–արլ–ից՝ Սյունիք, արլ–ից՝ Փայտակարան և Պարսկահայք, հվ–ից՝ Կորճայք, Մոկք և Աղձնիք, արմ–ից՝ Տուրուբերան նինգ–ներին: Ընդգրկում էր 35 գվո: Մ. թ. ա. IX դ–ից Վ–ի տարածքը մտել է *Ուրարտու* պետության կազմի մեջ, մ. թ. ա. VI դ–ից՝ Երվանդունի, մ. թ. ա. II դ–ից մինչև մ. թ. IV դ–ի վերջը՝ Արտաշեսյան, ապա՝ Արշակունի հայկ. թագավորությունների կազմի մեջ: Առավել նշանավոր նախարար. տներն են՝ *Արծրունիները, Ռշտունիները, Մարդպետունիները, Ամատունիները, Մամիկոնյանները, Գնունիները*): 908–ին Վ–ում Գագիկ Արծրունին հիմք է դրել առանձին թագավորության (տես *Վասպուրականի թագավորություն*): Մանազկերտի ճակատամարտում բյուզ. զորքի՝ սելջուկ–թուրքերից կրած ծանր պարտությունից հետո նինգ–ն ընկել է վերջիններիս տիրապետության ներքո: Վ–ում ստեղծվել է ինքնուրույն կաթողիկոսություն (տես *Աղթամարի կաթողիկոսություն*): 1639–ին Սեֆյան Իրանի և օսմ. Թուրքիայի կնքած հաշտության պայմանագրով Վ–ի մեծ մասը բռնատիրել է Թուրքիան: Իրանի տիրապետության ներքո մնացել են Մակվի, Նախիջևանի, Խոյի, Ղարադաղի խանությունների տարածքները: Թուրքիայի գրաված Վ–ի գվո–ները մտել են *Վանի վիլայեթի* մեջ: XX դ–ի սկզբին երկրամասի ազգաբնակչության բացարձակ մեծամասնությունը հայ էր: 1915–ի Մեծ եղեռնի ժամանակ Վ–ի հայ և ասորի բնակչության զգալի մասը ռուս. զորքի հետ տեղափոխվել է Արլ. Հայաստան:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, **Վասպուրականի Արծրունյաց թագավորություն, Արծրունյաց թագավորություն**, պետություն Հվ–արլ. Հայաստանում՝ 908–1021–ին՝ *Արծրունիների* արքայատան գլխավորությամբ: Վասպուրականի մեծ իշխան Գագիկ–Խաչիկը (տես *Գագիկ Արծրունի*) Ատրպատականի արաբ. ամիրության օգնությամբ անջատվել է Բագրատունյաց միասն. պետությունից և իրեն հռչակել անկախ թագավոր: Վ. թ. ընդգրկել է հիմնականում *Վասպուրական* (բացառությամբ Գաբիթյան և Պարսպատունիք գվո–ների), *Մոկք* նինգ–ները: Թագավորանիստ ք–ներն էին Վանը և Աղթամարը: 960–970–ական թթ–ին Բյուզ. կայսրության առաջխաղացումը դեպի արլ. վտանգի տակ է դրել Վ. թ–յան անկախությունը: Իսկ 1016–ից, երբ սելջուկ–թուրքերն ասպատակել են Վ. թ., *Սևներկրիմ–Հովհաննես* թագավորն ստիպված է եղել ընդունել իր տիրույթները կայսրությանը հանձնելու և փոխարենը Սեբաստիայի կուսակալությունում հողեր ստանալու Բյուզանդիայի առաջարկը: 1021–ին Վ. թ–յան ազատանու զգալի մասը թագավորի առաջնորդությամբ հաստատվել է Սեբաստիայում և նրան հարող շրջաններում:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԹԱՏՐՈՆ, գործել է 1861–64–ին Զմյուռնիայում (հիմնադիրներ՝ Սարգիս *Վանանդեցի* և Պ. Շահանյան), թատերախմբում՝ Հ. Խրիմյան, Գ. Թուղլաճյան, Հ. Խրմաճյան, Հ. Վարդովյան, Մ. Մնակյան, Ս. Էքշյան, Ս. Պենկլյան և ուր.: Խաղացանկում՝ ազգ–հայրենասիր., նաև թարգմ. գործեր (Մ. Պեշիկթաշլյանի «Արշակ Բ», Ս. Վանանդեցու «Միհրդատ», Թ. Թերզյանի «Սանդուխտ», Վ. Հյուգոյի «Անջելո», ևն):

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Վանա լճից արլ.: Զգվում է միջօրեականի ուղղությամբ՝ Իրանի և Թուրքիայի սահմանում: Ձրբաժան է Վանա լճի և Արաքսի ավազանների միջև: Երկ.՝ մոտ 120 *կմ*, բարձր.՝ մինչև 3623 *մ* (Ավրին լ.): Նշանավոր է Կոտուր գետի միջանցիկ խոր հովիտը, որով անցնում է Վան–Թավրիզ երկաթ–ն: Կլիման ցամաքային է, ձմեռը՝ ցուրտ, ամառը՝ շոգ, տարեկան տեղումները՝ 100–500 *մմ*: Տարածված են լ–տափաստաններն ու ալպ. մարգագետինները, գետահովիտներում՝ անտառապուրակներ և չորասեր բուսականություն:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ, հայկ. մանրանկարչության դպրոցներից (առավել նշանավոր էր XIII–XV դդ–ում): Վասպուրականում թարգմանել և ընդօրինակել են 2 հզ–ից ավելի ձեռագրեր, մի մասը՝ նկարազարդ («Մատյան ողբերգության», Մոնղ., 1390, 1391, ձեռ. № 4938, 1874, Ճառընտիր, 1401, ձեռ. № 4670, Ավետարան, XIV դ., ձեռ. № 7456): Վ. մ. դ–ում են ստեղծագործել *Սիմեոն Մրճիշեցին*, *Մելքիսեդեկը*, *Վարդան Արծկեցին*, *Սյունեցի Հովհաննես*, *Զաքարիա Աղթամարցին*, *Ծերոն Ծաղկողը*, *Գրիգոր Խլաթեցին*, *Ռափայելը*, *Հովհաննես Խիզանցին* և ուր.: Ձեռագրերում նկատելի են տեղուն., թեմատիկ. պատկերները, աշխարհիկ–կենցաղ. մոտիվները, պատվիրատուների, գրիչների ու նկարիչների դիմանկարները:

ՎԱՍՈՒԲԱՆԴՀՈՒՆ (մոտ 316–396), հնդիկ բուդդ. փիլ.: Վայբհաշիկա դպրոցի հիմնադիր՝ «Աբհիդհարմակոշա» աշխ–յան հեղինակ: Եղբոր՝ *Ասանգայի* ազդեցությամբ անցել է *մահայանային*՝ նրա հետ դառնալով *յոգաչարա* դպրոցի հիմնադիրը:

ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գրկ–յան տեսակ, որի օբյեկտիվ հիմքն ու առարկան փաստերի, փաստաթղթերի, իրական դեմքերի ու դեպքերի ճշմարտապատում աշխարհն է: Սերտորեն առնչվում է գիտ–յան, արվ–ի, փիլ–յան, հրապարակախոսության, սոցիոլոգիայի և այլ ոլորտների հետ: Վ. գ–յան տարատեսակներ են օրագրությունը, հուշագրությունը, ինքնակենսագր. վեպը, պատմվածքը, ակնարկը, ֆելիետոնը, պամֆլետը, գր. դիմանկարը:

ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ԿԻՆՈ, կինոարվ–ի տեսակ՝ հիմնված իրական փաստերի, իրադարձությունների, երևույթների նկարահանման վրա: Առաջին փաստագր. նկարահանումների հեղինակները Լյումիեր եղբայրներն են (1895, Ֆրանսիա): Տարբերում են փաստագր. և վավերագր. կինոնկարներ: Հիմնադիրներից են նաև Ռ. Ֆլաերտին (ԱՄՆ), Յ. Իվենսը (Հոլանդիա), Ջ. Գրիրսոնը (Մեծ Բրիտանիա), Զ. Վերտովը, Լ. Վ. Կուլեշովը, Է. Ի. Շուբը (ԽՍՀՄ): Հայաստանում առաջին փաստագր. կադրերը նկարահանվել են 1907–ին, վավերաֆիլմը («Խորհրդային Հայաստան»)՝ 1924–ին: Վ. կ–ի վարպետներից են Գ. Բալասանյանը, Լ. Իսահակյանը, Ա. Փելեշյանը, Ա. Վահունին, Ռ. Գևորգյանցը, Հ. Խաչատրյանը, Շ. Վարդանյանը և ուր.:

«ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՅՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ», մատենաշար: Հայաստանի ազգ. արխիվի հրտ–յուն: Հիմնադրվել է 1994–ին: Նախաձեռնող և կազմող՝ Սանդրո *Բևհրույան* (գիրք 1–15): Նպատակը Հայաստանի տարբեր դիվանատներում պահպանվող վավերագրերը հավաքելն ու դրանց քնն. բնագրերը հրատարակելն է: Յուրաքանչյուր հատոր ամբողջացնում է Հայ եկեղեցու պատմության XIX դ–ի 2–րդ կեսի և XX դ–ի որոշակի շրջան: Ցայսօր լույս է տեսել 17 գիրք:

ՎԱՎԵՐԱՅՈՒՄ, 1. **միջազգային իրավունքում**, լիազորված անձի կնքած միջազգ. պայմանագրի հաստատումը պետ. իշխանության գերագույն մարմնի կողմից: Համաձայն ՀՀ Սահմանադրության (հոդված 55, կետ 7)՝ միջազգ. պայմանագրերը ՀՀ նախագահի ներկայացմամբ վավերացնում է ԱԺ–ն, որից հետո նախագահը ստորագրում է դրանց վավերագրերը և հաստատում: Երկկողմ պայմանագրեր կնքելիս կողմերը կատարում են վավերագրերի փոխանակություն: Բազմակողմ պայմանագրեր կնքելիս մասնակից պետությունները վավերագրերը հանձնում են ի պահ որևէ պետության (դեպոզիտարիին): 2. **Քաղաքացիական իրավունքում**, պետ. իրավասու մարմնի (նոտար. գրասենյակի) կողմից օրենքով սահմանված կարգով ու ձևով իրավ. փաստի կամ նրա իսկության հաստատումը:

ՎԱՎԻԼՈՎ Նիկոլայ Իվանովիչ (1887–1943), ռուս կենսաբան, գենետիկ, ընտրասերման ժամանակակից կենսբ. հիմքերի և մշակովի բույսերի առաջացման կենտրոնների մասին տեսության հիմնադիրը: ԽՍՀՄ և Ուկր. ԽՍՀ ակադ. (1929), ՀամԳԳԱ 1–ին նախագահը (1929–35): Ս. Ի. *Վավիլովի* եղբայրը: Բուսաբանագրնում. արշավախմբեր է կազմակերպել Միջերկրածովայքի, Հս. Աֆրիկայի, Հս. և Հվ. Ամերիկայի երկրներ, հայտնաբերել մշակովի բույսերի ձևառաջացման կենտրոններ: Հավաքել է մշակվող բույսերի սերմերի մեծ հավաքածու և դրել դաշտ. բույսերի պետ. սորտափորձարկման հիմքերը:

Հիմնավորել է բույսերի իմունիտետի տեսությունը (1919), բացահայտել օրգանիզմների ժառանգ. փոփոխականության հոմոլոգ. շարքի օրենքը (1920): Պաշտպանել է գենետիկան Տ. Դ. Լիսենկոյի «ուսմունքից»:

1928 և 1934–ին եղել է Հայաստանում, Երևանի հվ–արլ. մասում՝ Շորաղբյուր կոչված շրջանում հայտնաբերել է վայրի ցորենների տեսակներ, որոնց ամման տարածքում 1981–ին առանձնացվել է Էրեբունի արգելոցը:

Համամիութ. աշխարհագր. ընկ–յան նախագահ (1931–40): Լենինյան մրց. (1926): Անհիմն բռնադատվել է (1940), մահացել է բանտի հիվանդանոցում:

ՎԱՎԻԼՈՎ Պյոտր Պետրովիչ (1918–1984), ռուս կենսաբան, բուսաբույծ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1979), ՀամԳԳԱ ակադ. (1973) և նախագահ (1978–84): Աշխ–ները վերաբերում են ճառագայթակենսբ–յանը, փորձարար. մուտածծությանը, բուսաբուծությանը և բույսերի ներմուծմանը (ինտրոդուկցիային):

ՎԱՎԻԼՈՎ Սերգեյ Իվանովիչ (1891–1951), ռուս ֆիզիկոս, խորհրդ. ֆիզ. օպտիկայի դպրոցի հիմնադիրը: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1932), նախագահ (1945–ից): Ն. Ի. *Վավիլովի* եղբայրը: Աշխ–ները վերաբերում են ֆիզ. օպտիկային, հիմնականում՝ լյումինեսցենցմանը և նրա գործն. կիրառությանը: Վ.–ի ղեկավարությամբ հայտնաբերվել է *Վավիլով–Չերենկովի ճառագայթումը*: Բացահայտել է (1924) լյումինեսցենցման քվանտ. ելքի օրենքը (Վավիլովի օրենք): Խորհրդ. մեծ հանրագիտարանի գլխ. խմբ. (1949–ից): ԽՍՀՄ Պետ. մրց. (1943, 1946, 1951, 1952՝ հետմահու):

ՎԱՎԻԼՈՎԻԱ (լատ.՝ Vavilovia), բակլազգիների (թիթեռնածաղկավորներ) ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Ունի 1 տեսակ՝ նրբագեղ Վ. (Vavilovia formosa): ՀՀ–ում հանդիպում է Գեղամա լ–շղթայի (Սև սար) և Կապուտջուղ լ–ան վերինալպ. գոտում (3000–3500 *մ* բարձր–ներում): Գրանցված է ՀՀ Կարմրր գրքում: Գեղագարդիչ է: Աճում է խճաքարերի, շարժվող փլվածքների և քարաթափվածքների վրա:

ՎԱՎԻԼՈՎ–ՉԵՐԵՆԿՈՎԻ ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄ, որևէ միջավայրով շարժվող լիցքավորված մասնիկի՝ լույս ճառագայթելու երևույթը, երբ նրա արագությունը գերազանցում է լույսի ֆազ. արագությունը այդ միջավայրում: Հայտնագործել է Պ. Ա. *Չերենկովը* 1939–ին, իսկ Ս. Ի. *Վավիլովը*, որի ղեկավարությամբ ընթանում էին այդ հետազոտությունները, ապացուցել է, որ դա նոր տիպի ճառագայթում է, որն արձակում են շարժվող էլեկտրոնները:

ՎԱՏԻԿԱՆԻ ԳԱՂՏՆԻ ԱՐԽԻՎ (լատ.՝ Archivum Secretum Aposto – licanum, իտալ.՝ Archivio Vaticano), պետ. արխիվ, Հռոմի կաթոլիկ եկեղեցու պաշտոն. փաստաթղթերի խոշորագույն հավաքածուն: «Գաղտնի» նշանակում է «առանձին, առանձնացված», ոչ «փակ»: XIV–XVI դդ–ում արխիվը եղել է Վատիկանի գրադարանի կազմում: 1611–14–ին ստեղծվել է պապ. կենտր. արխիվը: Պահպանված առաջին միավորը 1615–ից է: Արխիվի ղեկավարը *Հռոմի պապն* է: Յուրաքանչյուր 30 տարին մեկ արխիվը համալրվում է պապ. նվիրակների ձեռք բերած փաստաթղթերով: Վ. գ. ա–ում են պահվում նաև վերջին տիեզերաժողովների (Տրիդենտի, Վատիկանի 1–ին և 2–րդ) փաստաթղթերը: XIX դ–ի վերջին արխիվի հիմքի վրա ստեղծվել են բազմաթիվ ԳՀԻ–ներ:

Վ. գ. ա–ում պահվում են նաև *Հայոց ցեղասպանության* վերաբերող արժեքավոր փաստաթղթեր. 2017–ին դրանք ուսումնասիրելու հնարավորություն է ընձեռվել:

«ՎԱՏԻԿԱՆԻ ՌԱԴԻՈ» (“Radio Vatikana”), ռադիոհաղորդումների ծառայություն կաթոլիկ աշխարհի համար: Հիմնադրվել է 1931–ին Հռոմում: Հաղորդումներ է հեռարձակում 34 լեզվով՝ օրական ավելի քան 30 *ժ* տևողությամբ: 1949–ից գործում է հեռուստակենտրոնը:

ՎԱՏՈԼԻՆ Նիկոլայ Անատոլևիչ (ծ. 1926), ռուս մետաղագետ: ՌԳԱ ակադ. (1981): Աշխ–ները վերաբերում են մետաղաձուլ. հիմն. շարժընթացների ֆիզքիմիային:

ԽՍՀՄ (1982, 1991), ՌԴ (2000) Պետ. մրց–ներ:

ՎԱՏՏ, հզորության միավորը ՄՄՀ–ում: Նշանակվում է *Վտ* կամ W: Կոչվել է Ջ. *Ուաթտի* անունով: 1 *Վտ* = 10^7 *էրգ/վ* = 0,012 *կգ* ուժ · *մ*/*վ* = 1,36 · 10^{-3} *ձ. ու.*: Տեխնիկայում լայնորեն օգտագործում են Վ.–ի բազմապատիկ միավորները՝ կիլովատտ (1 *կՎտ* = 10^3 *Վտ*) և Մեգավատտ (1 *ՄՎտ* = 10^6 *Վտ*):

ՎԱՏՏԱՀՈՒՔ, էլ. հոսանքի հզորությունը հոսանքի շղթաներում *Վտ*–երով չափման սարք: Վ.–ի աշխ–ը հիմնված է 2՝ հոսանքի և լարման փաթույթների փոխազդեցության վրա, որոնք հաջորդաբար և զուգահեռ միացած են բեռնվածքին:

ՎԱՏՏԱՄ ատ–Թահիր (1936–2010), արաբ գրող (Այժիր): Հեղինակ է «Սերը և մահը խառնակ ժամանակներում» (1980) ազգ–ազատագր. պայքարի, «Սոմ և լաբիրինթոսներ» (1995), «Սուրբ Թահիրը վերադառնում է իր անաղարտ դամբարանը» (1999) ժամանակակից Այժիրում իսլամ. ահաբեկչության մասին վեպերի:

ՎԱՏՏ–ԺԱՄ, էներգիայի և աշխ–ի արտահամակարգ. միավոր: Նշանակվում է *Վտ·ժ* (1 *Վտ* · *ժ* = 3600 Ջ, 1 *կՎտ* · *ժ* = 3,6 · 10^6 Ջ):

ՎԱՐ, դեպարտամենտ Ֆրանսիայի հվ–ում: Տարածքը՝ 5973 *կմ*², բն.՝ 1 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ *Թուրն*:

ՎԱՐ, հողի մեխ. մշակման հիմն. գործադրաձև: Հողը վարելիս մեծանում է նրա ծակոտկենությունը, լավանում կառուցվածքը, ջրա– և օդաթափանցելիությունը, ակտիվանում օդակյաց մանրէների գործունեությունը, ավելանում մատչելի սննդատարրերի քանակը: Վ. կատարում են գութաններով:

ՎԱՐԱԳ, հայկ. հեթանոս. տոմարի ամիսների 29–րդ օրվա անունը. կոչվել է *Վարագա լեռան* անունով:

«ՎԱՐԱԳ», պատմ., ազգագր., գր. հանդես (1953–ից, Բոստոն, ապա՝ Բեյրութ, Ֆրեզնո, Գլենդել՝ հայ., անգլ.): Համավասպուրական. հայրենակց. միության հրտ–յուն: Խմբ–ներ՝ Զորջ Ֆրոյան, Վահան Փափազյան, Խոսրով Թյությունճյան, Գարեգին Գրիգորյան, Շնորհունի, Լիլի Չուլջյան և ուր., 2000–ից՝ խմբագրակազմ:

ՎԱՐԱԳԱ ԼԵՌ, **Վարագ**, գմբեթաձև լ–զանգված Վասպուրականի բարձրավանդակում՝ Վանա լճից 10 *կմ* արլ.: Բարձր.՝ 3250 *մ*, լանջերը զառիթափ են, աստիճանաձև: Կազմված է վերին կավճի նստվածք. ապարներից: Բնորոշ են լ–տափաստաններն ու ալպ. մարգագետինները: Կան պատմամշակութ. հուշարձաններ, որոնցից նշանավոր է եղել *Վարագավանքը* (IX–X դդ.):

ՎԱՐԱԳԱՎԱՆՔ, VII դ–ի ճարտ. համալիր Վան ք–ից հվ–արլ.՝ Վարագա լ–ան լանջին: Հնագույն գմբեթավոր դահլիճ տիպի Սբ Սոփիա եկեղեցու (981, պահպանվել է արլ. հատվածը) հս–ից կից էր Սբ Հովհաննես եկեղեցին (X դ.): 2,5 *մ* դեպի հս կանգուն է Վ.–ի գլխ.՝ Սբ Աստվածածին հռիփսիմեատիպ եկեղեցին (XI դ., ծածկը և գմբեթը քանդված են): Սբ Նշան եկեղեցին (XI դ.) գմբեթավոր դահլիճ է: Ավերվել է երկրաշարժից (1648): Նույն թվականին կառուցվել է գավիթ (ճարտ.՝ *Տիրափուր*, XIX դ–ում ծառայել է որպես եկեղեցի՝ Սբ Գևորգ), ապա՝ Սբ Խաչ (XVII դ.) և Սբ Սիոն (XVII դ.) եկեղեցիները: 1915–ին Վ. լքվել է (այժմ՝ ավերակ):

ՎԱՐԱԳԱՎԱՆՔԻ ԴՊՐՈՑ, Վարագավանքի ժառանգավորաց դպրոց, հիմնադրվել է 1857–ին Վարագավանքում՝ վանահայր Մկրտիչ Խրիմյանի (*Մկրտիչ Ա. Վանեցի*) և համախոհների ջանքերով: Եղել է նոր տիպի դպրոց, որտեղ վերացված էր մարմն. պատիժը, ծրագր. առարկաների ցանկում առաջին անգամ դասավանդել են հայրենագիտ–յուն: Ունեցել է գրադարան, թանգարան, տպարան, լույս է ընծայել «*Արծուի Վասպուրական*» պարբ–ը: 1896–ի կոտորածների և Վանի ինքնապաշտպ–յան օրերին վանքն ու դպրոցն ավերվել են, ուսուցիչներից ու սաներից շատերը՝ սպանվել:

ՎԱՐԱԳՈՒՅՐ, գործածվել է հնուց, հաճախ՝ զարդարվել: Առանձնանում են եկեղեց. և թատեր. Վ.–ները: Եկեղեց. Վ. Հայաստանում պահպանվել է որպես ծիս. արարողակարգի պարագա՝ խորանը ծածկելու համար (լավագույնն Էջմիածնի Մայր տաճարի Ավագ խորանի Վ. է, 1705–1714, Կ. Պոլիս): Թատեր. Վ. բեմը հանդիսատեսից բաժանող տարր է: 1923–ին Մ. Սարյանը ստեղծել է Հայաստանի Առաջին պետթատրոնի Վ., 1987–ին Գ. Խանջյանը՝ մարզահամերգ. համալիրի համերգ. դահլիճի «Վերածնունդ» գոբելեն–Վ.:

ՎԱՐԱԶ (Սամվելյան Վարազդատ Սամվելի, 1917–1995), քանդ., նկարիչ: 1946–ից՝ ԱՄՆ–ում (1957–ից՝ Ֆրեզնոյում): Քանդակներին բնորոշ են դինամիզմը, նոր արտահայտչամիջոցները («Քենեդի», 1964, «Սասունցի Դավիթ», 1970, Ֆրեզնոյի քաղաքապետարանի առջև, «Վարդան Մամիկոնյան», 1972, Ֆրեզնո, «Վիլյամ Սարոյան», 1974, Ֆրեզնո, ևն): Հեղինակ է նաև գրաֆիկ. և գեղանկարչ. գործերի, հուշագրությունների: Մտերիմ է եղել Վիլյամ *Սարոյանի* հետ:

ՎԱՐԱԶ ԳՐԻԳՈՐ (ծ. թ. անհտ–մոտ 636), Գարդմանի տեր և իշխան՝ մոտ 628–ից՝ *Միհրանյանների* իշխան. տոհմից: Իշխան. տիտղոսն ստացել է Պարսից արքունիքից: Ենթարկվելով բյուզ. զորքերի և խազարների արշավանքներին՝ Վ. Գ. ընդունել է նրանց տիրապետությունը և պահպանել իշխանությունը:

ՎԱՐԱԶ ՏՐԴԱՏ (ծ. թ. անհտ–մոտ 709), Գարդմանի տեր և իշխան՝ մոտ 684–ից՝ *Միհրանյանների* իշխան. տոհմից: *Ջիվանշիրի* եղբայր Վարազ Պերոժի որդին: Հակատակություն հայտնելով Արաբ. խալիֆությանը՝ պահպանել է ինքնուրույնությունը: Մոտ 699–ին Անդրկովկաս արշաված բյուզ. բանակը գերեվարել է Վ. Տ–ին ու նրա որդիներին: Մոտ 704–ին Վ. Տ. վերադարձել է Բյուզանդիայից և կրկին իշխել երկրամասում:

ՎԱՐԱԶԱՓՈՒՇ, աստղածաղկազգիների ընտանիքի խոտաբույսերի, հազվադեպ՝ թփերի ցեղ: Հայտնի է մոտ 20 տեսակ, ՀՀ–ում՝ 1՝ Շիրակի, Վայոց ձորի, Տավուշի, Սյունիքի մարզերի ստորին և վերին լեռն. գոտիներում: Աճում է լ–տափաստաններում, չոր մացառուտներում և ճամփեզրերին: Դեղաբույս է: Պատրաստուկներն օգտագործում են ստամոքսի թերֆունկցիայի, ռևմատիզմի ժամանակ և որպես քրտնաբեր միջոց:

ՎԱՐԱԶԴԱՆ, Հայոց արքա՝ 374–378–ին՝ Արշակունիների արքայատոհմից: Գահ է բարձրացել Բյուզանդիայի կայսր Վալենսի օգնությամբ: 378–ին *Մանվել Մամիկոնյանը* Կարինի ճակատամարտում պարտության է մատնել և գահընկեց արել Վ.–ին: Վ. ապաստանել է Բյուզանդիայում, սակայն կայսրն աքսորել է նրան մի հեռավոր կղզի: Վ. հաղթահասակ, արտակարգ ուժեղ, բազմակողմանի զարգացած մարզիկ էր. ըմբշամարտում դարձել է օլիմպ. խաղերի (385–ին) հաղթող:

ՎԱՐԱԶՏԻՐՈՑ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, **Վարազտիրոց II Բագրատունի** (590–646), Հայոց մարզպան՝ 628–634–ին: Հայոց, ապա՝ Վրկանից մարզպան *Սմբատ Բագրատունի* Բազմահաղթի որդին: Օգտվելով պարսկ. տերության թուլացումից՝ *Թեոդորոս Ռշտունու* հետ վարել է անկախ քաղ–յուն: Ատրպատականի պարսիկ մարզպան Խոռոհ Որմիզդի որդի Ռոստոմի հալածանքների պատճառով Վ. Բ., ստիպված, ընտանիքի հետ անցել է Կ. Պոլիս, հյուրընկալվել Հերակլիոս կայսեր մոտ, սակայն վերջինիս դեմ ապստամբություն կազմակերպելու ամբաստանությամբ Վ. Բ. աքսորվել է Աֆրիկա: 646–ին աքսորից վերադարձել է Կ. Պոլիս, ծպտյալ եկել Հայաստան և հաստատվել Տայքում: Հանկարծամահ է եղել:

ՎԱՐԱԺՆՈՒՆԻՆԵՐ, **Վարաժնունիք**, նախարար. տոհմ հին և միջնադար. Հայաստանում: Ըստ Մովսես Խորենացու՝ տոհմի անվանադիրը Գեղամ նահապետի շառավիղ, Դատ իշխանի որդի Վարաժն է (մ. թ. ա. II դ.). վարել է արքունի որսապետության գործակալությունը: Վ.–ի ժառանգ. տիրույթը եղել է Այրարատ նահանգի Վարաժնունիք գավ–ը: Տոհմի խոշորագույն ներկայացուցիչը համարվում է *Փիլարտոս Վարաժնունին*:

ՎԱՐԱԺՆՈՒՆԻՔ, 1. գավ Այրարատ նահանգում՝ Գեղամա ծովի (Սևանա լիճ) հս. և հս–արմ. շրջանում: Հվ–ից սահմանակից էր Մազազ, արմ–ից՝ Նիգ, հս–ից՝ Գուգարքի Տաշիր ու Արցախի Մեծկունենք գավ–ներին: Վ. եղել է *Վարաժնունիների* նախ–յան ժառանգ. տիրույթը: Արաբ. տիրապետության թոթափումից և հայկ. պետականության վերականգնումից հետո Վ.–ում իշխել են *Պահլավունիները*: Բագրատունյաց թագավորության անկումից հետո Վ. ռազմակալել են բյուզ. զորքերը (մինչև 1060–ական թթ.), այնուհետև այն նվաճել են սելջուկ–թուրքերը: Վ. տնտ. ու մշակութ. նոր վերելք է ապրել XIII–XIV դդ–ում՝ Զաքարյանների իշխանապետության ժամանակ: Սակայն հետագա օտար նվաճողների (թաթար–մոնղոլներ, թուրքմ. հրոսակ ցեղեր, Սեֆյաններ) տիրապետության ժամանակաշրջանում (XIV դ–ի կես–XIX դ–ի 1–ին քառորդ) ծայրահեղ անկման է հասել տնտ. ու մշակութ. կյանքը: 1828–ին Թուրքմենչայի պայմանագրով՝ Արլ. Հայաստանի հետ Վ.–ի տարածքն անցել է Ռուսաստանին: 2. Գվո Տուրուբերան նահնգ–ում: Հիշատակվում է VII դ–ի «Աշխարհացոյց»–ում՝ Արածանի գետի և Ապահունիք գվո–ի մերձավորությամբ:

ՎԱՐԱԿԱԶԵՐԾՈՒՄ, **դեզինֆեկցիա** (< *հնց*... և միջնադար. լատ.՝ infectio), մարդու և կենդանիների վարակիչ հիվանդությունների, հարուցիչների ոչնչացման քիմ. և կենսբ. միջոցառումների համալիր: Տարբերում են կանխարգելիչ (փոխադրամիջոցների, սննդի օբյեկտների, ջրի ևն), ընթացիկ (հիվանդին շրջապատող առարկաների) և եզրափակիչ (օր.՝ հիվանդին հոսպիտալացնելուց հետո) Վ.:

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, 1. հիվանդություններ, որոնք առաջանում են ախտածին մանրէներով վարակվելուց, բնորոշվում են վարակված օրգանիզմից առողջին փոխանցմամբ: 2. Կլինիկ. բժշկագիտ–յան բաժին. ուսումնասիրում է Վ. հ–ի պատճառները, զարգացման մեխանիզմները, ախտորոշման, բուժման և կանխարգելման մեթոդները:

ՎԱՐԱՆԱՄՈՒ, **Բենարես**, ք. Հնդկաստան Ուտար Պրադեշ նահնգ–ում՝ Գանգես գետի ափին: Բն.՝ 1,2 մլն (2010): Հնդուականների և բուդդայականների կրոն. ուխտագնացության պատմ. կենտրոն և վայր է: Հիմնադրվել է մ. թ. ա. VII դ–ում:

ՎԱՐԱՆԴ [Բյուրքչյան (Գյուրջյան) Սուքիաս Հակոբի, ծ. 1954], իրանահայ բանաստեղծ, թարգմանիչ: Հեղինակ է «Արևի ճամբով» (1972), «Հողմ հրոց» (պոեմ, 1978), «Սուր եւ սուեր» (1982), «Մեղքի վարդեր» (1989), «Անվերադարձ» (1999), «Ձերմ ստւերներ» (2003), «Այս աչքերը» (2008), «Կարօտի նշխարներ» (2012) և այլ ժողուների: Վ.–ի ընտրանին հրատարակվել է պարսկ., գործերից թարգմանվել են նաև անգլ., ֆրանս., ռուս., ճապոն. և այլ լեզուներով: Թարգմանել է բանաստեղծություններ պարսկ–ից հայ. և հայ–ից պարսկ.:

«Սբ Ներսես Շնորհալի» (Իրան), ԹՄՄ (ՀՀ), «Գևորգ Մելիտենեցի» (Լիբանան) մրց–ներ (բոլորը՝ 1972–ին), ՄՏԿԿ «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան (1994):

ՎԱՐԱՆԴԱ, գետ ԼՂՀ–ում, Արաքսի ձախ վտակը: Սկիզբ է առնում Արցախի լ–շղթայից՝ 1780 *մ* բարձր–ից, Արաքս է թափվում ծ. մ. 90 *մ* բարձր–յան վրա: Երկ.՝ 81,2 *կմ*, ավազանը՝ 501,2 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 0,67 *մ*^{3}/*վ* (Կարմիր շուկա գ.): Մնումը հիմնականում անձրևային (59 %) և ստորերկրյա (31 %) է, վարարումը՝ ապրիլ–հունիսին: Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով:

ՎԱՐԱՆԳՅԱՆ (Հովհաննիսյան) Միքայել Արտեմի, **Էգո** (1870–1934), ազգ–ազատագր. շարժման գործիչ, հրապարակախոս: 1907–ից՝ ՀՀԴ կուս–յան ներկայացուցիչը 2–րդ ինտերնացիոնալում: ԱՀՊ–ի տարիներին հրատարակել է «Հայաստանը և Հայկական հարցը» (ֆրանս.) և այլ աշխ–ներ: Ընտրվել է ՀՀ (1918–20) խորհրդարանի անդամ, նշանակվել ՀՀ դիվանագիտ. ներկայացուցիչ Հռոմում:

ՎԱՐԱՆՆԵՐ (Varanidae), մողեսների ենթակարգի սողունների ընտանիք: Երկ.՝ մինչև 3 *մ*: Հայտնի է 1 սեռի 5 տեսակ՝ Արլ. կիսագնդում: Գիշատիչ են, սնվում են մողեսներով, օձերով, մանր կաթնասուններով ևն: Մողեսների ամենախոշոր ներկայացուցիչը հսկա կամ կոմոդյան Վ. է: Կենտր. Ասիայի ֆաունայի ամենախոշոր մողեսը՝ մոխրագույն Վ. (երկ.՝ մինչև 1,6 *մ*), գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՎԱՐԱԲԱԿ, Գոռիս, գետ ՀՀ Սյունիքի մարզում, Որոտանի ձախ վտակը: Սկիզբ է առնում Սյունիքի բարձրավանդակի Մեծ Իշխանասար լ–գագաթի հվ–արլ. լանջից՝ 2750 *մ* բարձր–ից: Երկ.՝ 29 *կմ*, ավազանը՝ 146 *կմ*², ջրի միջին ծախսը՝ 0,95 *մ*³/վ: Մնում–մը խառն է՝ ստորերկրյա (76 %), ձնաանձրև. (24 %), վարարումը՝ ապրիլ–մայիսին: Ջրերն օգտագործվում են ոռոգման և էներգետիկ. նպատակներով: X դ–ի կեսերին գետի վրա կառուցվել է համանուն ջրանցքը:

ՎԱՐԱՐՈՒՄ, գետի ջր. ռեժիմի կանոնավոր փուլ, բնութագրվում է տարվա ընթացքում ամենամեծ ջրաբերությամբ, ջրի երկարատև բարձր մակարդակով, որը հաճախ ուղեկցվում է հունից ջրի ողողատ դուրս գալով: Հայկ. լ–աշխարհի գետերին (Եփրատ, Կուր, Արաքս ևն) բնորոշ է գարնան. Վ–ների փուլը, որի ժամանակ հաճախ դիտվում է գետի ջրի աոլգն ծախս: ՀՀ գետերում Վ–ման ալիքի բարձրացման միջին տևողությունը 20–30 օր է (սառցարծերից և ձնարծերից սնվող գետերում՝ 35–45, երբեմն՝ 60), ալիքի նվազման միջին տևողությունը՝ մոտ 50: Առանձին օրերի ջրի մակարդակը սովորականից բարձրանում է 100–150 *սմ*:

ՎԱՐԲՈՒՐԳ (Varburg) Օտտո Հենրիխ (1883–1970), գերմանացի կենսաքիմիկոս: Հետազոտել է կենդանի բջջում ընթացող օքսիդավերականգնման շարժընթացները, ֆերմենտների ծագումն ու ֆունկցիաները: Առաջինն է բացատրել բջջ. ֆերմենտների ազդեցությամբ շնչառության մեխանիզմները: Աշխ–ները վերաբերում են լուսասինթեզին և ուռուցքաբանությանը: Նոբելյան մրց. (1931):

ՎԱՐԳԱ Եվգենի Սամուիլովիչ (1879–1964), ռուս. տնտեսագետ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939): Ղեկավարել է Համաշխ. տնտ–յան և համաշխ. քաղ–յան ինստ–ը (1927–47): Աշխ–ները վերաբերում են կապիտալիզմի քաղ–յանը: Լենինյան մրց. (1963):

ՎԱՐԳԱՍ (Vargas) Ժետուլիու Դոռնելիս (1883–1954), Բրազիլիայի նախագահ՝ 1930–45 և 1951–54–ին: 1937–ին հաստատել է «նոր պետության» վարչակարգ՝ ֆաշիստ. Իտալիայի նմանությամբ: 1945–ին հիմնադրել է Բրազիլիայի բուրժուաառեֆորմիստ. տրաբալիստական (աշխատավոր.) կուս–յունը: Նպաստել է արդ–յան պետ. սեկտորի զարգացմանը:

ՎԱՐԳԱՍ ԼԻՈՍԱ (Vargas Llosa) Խորխե Մարիո Պեդրո (ծ. 1936), պերուացի գրող: 1990–ական թթ–ից՝ Լոնդոնում: Հեղինակ է «Քաղաքը և շները» (1963), «Կանաչ տունը» (1965), «Պանտալեոնը և այցելուների ջոկատը» (1973, հայ.՝ 2015), «Մորաքույր Խուլիան և գրչակը» (1977) հոգեբ. վեպերի, նաև պատմվածքների ու վիպակների, որտեղ պատկերել է օրավուր սրվող սոցիալ. ճգնաժամը, դաժանության ու բռնության վրա հիմնված մարդկային հարաբերությունները, «Քեթին ու գետաձին» (1983) պիեսի: Նոբելյան մրց. (2010):

ՎԱՐԴ (Վարդան) Ռոզի (Մանուելյան Նվարդ) Հովհաննեսի (1923–2012), դերասանուհի: Խաղացել է Փարիզի «Օդեոն», «Շանս Էլիզե», «Մադլեն», «Միշել» և այլ թատրոններում (Վ. Շեքսպիրի «Կամակոր կնոջ սանձահարումը», Ա. Դյումա–հոր «Երեք հրացանակիրներ», ևն), նկարահանվել կինոյում («Սարսափ քաղաքում», «Նինա», «Մատուցողը», նաև «Մազի հեռուստասերիալում): Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» շքանշան (1998):

ՎԱՐԴ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ, Վարդ պատրիկ (մոտ 445–մոտ 510), Հայոց սպարապետ՝ մոտ 486–ից, մարզպան՝ մոտ 505–509–ին: ***Վահան Սամիկոնյանի*** կրտսեր եղբայրը, ***Վարդան Սամիկոնյանի*** պապը: Երկար տարիներ պատանդ է եղել Սասանյանների արքունիքում: 482–ին փախել է պատանդությունից և մասնակցել 482–484–ի Վահանանց պատերազմին: Եղբոր մարզպանության տարիներին (մոտ 487–505) կարգվել է Հայոց սպարապետ: Վահան Սամիկոնյանի մահից հետո Պարսից Կավատ արքան Վ. Մ–ին ճանաչել է Հայոց մարզպան, իսկ մի քանի տարի անց ամբաստանությամբ տապալել նրան:

ՎԱՐԴԱ Անյես (Վարդանյան Անահիտ, ծ. 1928), բելգիահայ կինոռեժ.: 1951–61–ին աշխատել է Փարիզի ժ. Վիլարի ժող. թատրոնում: Կինոյում ճանաչվել է «Պուանտ կորտն» (1955) ֆիլմով: Վ. համարվում է «Նոր ալիք» կինոմիավորման ամենահինքնատիպ ռեժ–ը («Կլեոն՝ ժամը 5–ից 7–ը», «Սև հովանոցներ», «Առյուծի սերը», «Արարում» ևն): Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» շքանշան (2009, 2017):

ՎԱՐԴԱԳՈՒՅՆ ՈՐՔԻՆ, անհայտ պատճառագիտ–յան մաշկի հիվանդություն. բնորոշվում է մարմնի և վերջույթների վրա բաց վարդագույն, թեթևակի թեփոտվող բծերի առաջացմամբ:

ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ Արտակ Սևանի (1951–2005), արձակագիր, թարգմանիչ, խմբ.: 1990–91–ին՝ ***Արմենպրեսի*** տնօրեն, 1999–2003–ին՝ ՆԳՆ լրատվության վարչության պետ: Հեղինակ է «Թաց մամուռ» (1984), «Պատ» (1987), «Արյան ընթացքը» (2003) պատմվածքների ժող–ների:

ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ Մարտին Յոլակի (ծ. 1938), կոմպոզիտոր, դաշնակահար: Յոլակ ***Վարդազարյանի*** որդին: ՀՀ ժող. արտիստ (2011): 1966–72–ին՝ ՀՀ հեռուստառադիոյի էստրադ. անսամբլի գեղ. ղեկ.: Հեղինակ է «Անմեղ զոհերի հիշատակին» սիմֆոնիայի (1987), «Նվիրում Բարտոկին» սիմֆ. պոեմի (1970), կամեր. անսամբլ. գործերի, ռոմանսների, երգերի, խմբերգերի, թատրոնի և կինոյի երաժշտության («Բարև, ես եմ», 1965, «Սարոյան եղբայրներ», 1968, «Երկունք», 1976, «Կարոտ», 1990, բոլորը՝ Հայֆիլմ, ևն):

ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ Նորայր Դրաստամատի (ծ. 1937), ախտաբան–անատոմ: Բժշկ. գիտ. դ–ր (1975), պրոֆ. (1981): ՀՀ ԲԳԱ (2001), ՌԲՏԳԱ (2001) անդամ: Աշխ–ները վերաբերում են ռևմատիզմի պատճառագիտ–յան և ախտածնության առանձնահատկություններին: Առաջինն է առանձնացրել մաշկի ստրեպտոկոկ., ալերգ. անոթաբորբը՝ որպես ինքնուրույն հիվանդություն, տվել պատճառագիտ–յան, բուժման տես. հիմունքները:

ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ Տաճատ Տիգրանի (1914–1989), դերասան, ռեժ.: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1961): 1947–53–ին՝ Լենինականի, Կիրովականի դրամատիկ. թատրոնների ռեժ., 1954–74–ին (ընդմիջումով)՝ ԵԵԿԹ, 1972–ին՝ Ստեփանակերտի դրամատիկ. թատրոնների գլխ. ռեժ.: Դերերից են՝ Նազար (Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար»), Բալաբեկ (Ն. Զարյանի «Աղբյուրի մոտ») ևն, բեմադրություններից՝ «Կապկազ Թամաշա» (ըստ Ե. Չարենցի, 1957), Ժ. Հարությունյանի «Գլխի գինն է հիսուն միլիոն» (1967) ևն: Հեղինակ է բեմավորումների և պիեսների:

ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ Յոլակ Մարտիրոսի (1910–1944), փողհար, դիրիժոր: Մարտին ***Վարդազարյանի*** հայրը: Հայաստանի ջազ–նվագախմբի հիմնադիրներից: 1937–ին՝ ԵՕԲԹ–ի նվագախմբի մենակատար, 1942–ից՝ ԵԵԿԹ դիրիժոր: Երաժիշտ կատարողների համամիութ. մրցույթի դափնեկիր (1941, Մոսկվա):

ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ Փիլիպոս Հակոբի (1858–1935), գործարար, բարերար, հրտ., մշակույթի գործիչ: Եղել է «Մուրճ» ամսագրի և «*Հորիզոն*» գր. հանդեսի հրտ–ը, նյութապես աջակցել Հովհաննես ***Թումանյանի*** երկերի հրատարակմանը: Հեղինակ «Վշտի ու թախծի երգիչ Յովհ. Թումանեան» (1905) գրքույկի, կատարել է թարգմ–յուններ: Պահպանվել են Վ–ի Հ. Թումանյանին ուղղված շուրջ 80 նամակ և երկտող:

ՎԱՐԴԱԶԳԻՆԵՐ (Rosaceae), երկշաքիլ բույսերի ընտանիք: Ծառեր, թփեր և խոտաբույսեր են: Հայտնի է Վ–ի շուրջ 115 ցեղ, ավելի քան 3000 տեսակ՝ տարածված երկրագնդի բոլոր մասերում, ՀՀ–ում՝ 31 ցեղ, 115 տեսակ: Բաժանվում է մի շարք ենթաընտանիքների, որոնց որոշ կարգաբաններ համարում են ինքնուրույն ընտանիքներ: Վ–ի պտուղներն օգտագործվում են սննդի մեջ, կան գեղազարդիչ տեսակներ և դեղաբույսեր:

ՎԱՐԴԱՎԱՌՅՈՒԲ, գետ Շիրակի մարզում: Սկիզբ է առնում Յողասարի լ–ների ծայր արլ. մասից և Ողջի գ–ում ձախից միախառնվում Աշոցք գետին: Երկ.՝ 13 *կմ*:

ՎԱՐԴԱՆ, XIII դ–ի մանրանկարիչ: 1251–ին Հռոմկլայում պատկերազարդել է Սարգիս գրիչի ընդօրինակած Ավետարանը (Մտնդ., ձեռ. № 3033, 411 թերթ), որտեղ նա պատկերել է 11 խորան, 4 ավետարանիչների պատկերները՝ անվանաթերթերով, բազմաթիվ լուսանցազարդեր՝ կիլիկ. մանրանկարչության ավանդույթներով:

ՎԱՐԴԱՆ, **Խանասորի Վարդան** (Մեհրաբյան Սարգիս, 1870–1943), քաղ–ռազմ. գործիչ: 1896–ի գարնանը ղեկավարել է Շատախի ինքնապաշտպ–յունը, սեպտ–ին մասնակցել Վանի կռիվներին: 1897–ին նշանակվել է ***Խանասորի արշավանքի*** ընդհ. հրամ.: 1905–ի հայ–թաթար. ընդհրումների ժամանակ Վ–ին էր վստահված Ղարաբաղի ինքնապաշտպ–յունը: 1908–ի երիտթուրք. հեղաշրջումից հետո հաստատվել է Իզմիրում: 1915–ի գարնանը նշանակվել է Արարատյան ջոկատի հրամ., որը, որպես ռուս. բանակի առաջապահ, օգնության է հասել Վասպուրականի հայությանը: Հայաստանի խորհրդայնացումից հետո ապրել է Երևանում:

ՎԱՐԴԱՆ Սիլվի Ժորժի (ծ. 1944), ֆրանսահայ երգչուհի, դերասանուհի: 1961–ից հանդես է եկել ամուսնու՝ Ջոնի ***Հոլիդեյի*** հետ: Երգացանկում՝ ռոք և փոփ երգեր: Նկարահանվել է կինոյում («Որոնեցեք կուոքը», «Բատատ» ևն):

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿԱՑԻ, XII–XIII դդ–ի առաքելաբան–քարոզիչ: Գործել է Ամիթում, Դլուքում, 1210–ին հաստատվել է Դոսխ ձորում (Կիլիկյան Հայաստան) հիմնադրված Այգեկ վանքում (այստեղից՝ Այգեկցի), զբաղվել գր. գործունեությամբ: Վ. Ա–ու՝ մեզ հասած ամենավաղ գործը «Արմատ հաւատոյ» (հրտ.՝ 1998) վկայությունների ժող–ն է: Դավան. գործերից են «Վասն անիրաւ բամբասողաց եկեղեցւոյս Հայաստանեայց» և «Վասն շատահաւ քննողացն յանդիմանութիւն» երկերը (հրտ.՝ 1969, Մտնդ–ի № 8356 ձեռագրում

հայտնաբերել, ուսումնասիրել և հրատարակել է Հակոբ *Անապատը*)։

Վ. Ա. իր ճառերն ու քարոզները հագեցրել է առակներով ու զրույցներով՝ դառնալով հայ գրկ–յան մեջ առակավոր ճառի հիմնադիրը։ Առակներում հաճախ գործող անձն աղվեսն էր, այդ պատճառով մեծ առակախմբերից մեկն անվանվել է «Աղուէսագիրք» (հրտ.՝ 1668, ֆրանս.՝ 1825)։ Լույս է տեսել նաև Վ. Ա–ու «Խրատք» (1956) ժող–ը։

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻ, Վարդան Կիլիկեցի, Վարդան Պատմիչ, Վարդան Վարդապետ (մոտ 1198–1271), պատմագիր, աշխարհագետ, մեկնիչ, փիլ., թարգմանիչ, մանկավարժ, հաս. և եկեղեց. գործիչ։ Աշակերտել է *Մխիթար Գոշին*։ Հիմնադրել է Կայենաբերդի Սբ Անդրեի վանքի դպրոցը և այնտեղ դասավանդել (1235–39, 1252–55)։ Մասնակցել է Սսի 1243–ի և 1251–ի ազգ–եկեղեց. ժողովներին։ *Կոստանդին Ա. Բարձրբերդցու* համագործակցությամբ գրել է «Թուղթ խրատականը»։ 1252–ին վերադարձել է Հայաստան, գումարել Հաղպատի և Զագավանի ժողովները, հիմնադրել Սաղմոսավանքի, Թեղենյաց մենաստանի, Աղջոց վանքի, Խորակերտի դպրոցները, դասավանդել Հաղպատի ուսումնագիտ. կենտրոնում։ 1255–ին հիմնադրել է Խոր վիրապի դպրոցը։

ՎԱՐԴԱՆ ԱՐԾԿԵՑԻ, XIV դ–ի մանրանկարիչ։ Ստեղծագործել է Վասպուրականի Արծկե ք–ում։ Գործերից հայտնի է 2 Ավետարան (1319–ի № 4125 և XIV դ–ի № 7456, երկուսն էլ՝ Մտնդ.), որտեղ կամարաձև խորանները, ուշագրավ լուսանցազարդերն աչքի են ընկնում նրբագեղ և ավարտուն գծանկարներով, գույների (կապույտի գերակշռումով) նուրբ, երբեմն՝ թափանցիկ տոների համադրումով։

ՎԱՐԴԱՆ ԲԱՂԻՇԵՑԻ, XVI դ–ի 2–րդ կեսի մանրանկարիչ։ Ստեղծագործել է Բաղեշում (Բիթլիս)։ Ձեռագրերից 6–ը (1569–ի № 1920 ժող., 1571–ի № 4845, 1578–ի № 9294 Ավետարաններ, 1576–ի № 5434 Գանձարան, 1577–ի № 961 Մաշտոց, XVI դ–ի № 9092 Հայսմավուրք) պահվում են Մտնդ–ում։ Ձեռագրերում, բացի տերուն. պատկերներից, ստեղծել է ՀԱԵ սրբերին և եկեղեց. պատմ. իրադարձություններին նվիրված տեսարաններ։

ՎԱՐԴԱՆ ԲԱՂԻՇԵՑԻ Եղիայի (ծ. թ. անհտ–1704/05), ժամանակագիր, եկեղեց. գործիչ։ Սովորել է Ամրդոլու վանքում, դարձել վրդ. և նույն վանքի առաջնորդ (1663)։ Վ. Բ–ուց մեզ են հասել Ամրդոլու մտնդ–ի ձեռագիր ու տպագիր գրքերի ցուցակը, որտեղ շարադրված են 1170–1657–ի Հայաստանի պատմ. անցքերը, ինչպես նաև հայ պատմիչների գործերի և օտարազգի պատմիչների աշխ–ների հայ. թարգմ–յունների (V–XVIII դդ–ի սկիզբ) ցանկերը։

ՎԱՐԴԱՆ ԿԱՋՄՈՂ, XVI դ–ի քանդակազարդող վարպետ։ Ստեղծագործել է Վայոց ձորում (1545–88)։ Հայտնի է նրա 3 խաչքարը։ 1545–ինը դրված է եղել Գյոգաբասի եկեղեցու արմ. մուտքի հս. կողմում (1936–ից՝ Եղեգնաձորի եկեղեցու բակում), 1551–ինը՝ Գնդեվանքի եկեղեցու արմ. պատի հս. որմնախորշում, 1583–ինը՝ Գյոգաբասի գյուղատեղիում, որոնք դարաշրջանի լավագույն գործերից են։

ՎԱՐԴԱՆ ԿԱՐԵԵՑԻ XVIII դ–ի տոմարագետ։ 1707–ին կազմած իր աշխ–յան մեջ առաջարկել է անշարժ տոմար՝ հայկ. օրացույցի կառուցվածքի հիմքով, որտեղ տարին ունի 12 ամիս՝ 30–ական օրով, և մեկ ամիս՝ 5 օրով, 4 տարին մեկ (նահանջ համարվող տարում) լրացուցիչ օրը դրվում է 12–րդ ամսվա վերջում, տարվա սկզբի ամսի՝ Նավասարդի 1–ը համապատասխանում է մարտի 21–ին, վերջին՝ Ավելյաց ամսի 1–ը՝ մարտի 16–ին։

ՎԱՐԴԱՆ ԿԱՖԱՅԻ, Կաֆայեցի (1615–1712), տաղերգու, տոմարագետ, գրիչ, հաս., եկեղեց. գործիչ։ Եպս. (1680)։ 1648–80–ին՝ Կաֆայի (Թեոդոսիա) Սբ Աննա վանքի վանահայր, 1680–ից՝ Ղրիմի հոգևոր առաջնորդ (ցկյանս)։ Հեղինակ է տաղերի, չափածո տոմարի (1676)։ Ընդօրինակել է բազմաթիվ ձեռագրեր։

ՎԱՐԴԱՆ ՀԱՂԲԱՏԵՑԻ (ծ. թ. անհտ–1193), մատենագիր, մանկավարժ։ 1160–1170–ական թթ–ին եղել է Կիլիկ. Հայաստանում, աշակերտել *Ներսես Շնորհալուն*։ 1170–ին մասնակցել է հայկ. և բյուզ. եկեղեցիների միության խնդրի քննարկմանը, պաշտպանել «հյուսիսային կողմանց վարդապետների» (Հաղպատ, Սանահին ևն)՝ Հայոց եկեղեցու ինքնուրույնությունն ապահովող տեսակետը։ Գրել է Գրիգոր Նազիանզացու և Գրիգոր Նյուսացու «Ճառերի» մեկնությունները։

ՎԱՐԴԱՆ ՀԱՅԿԱԶՆ, XI դ–ի վերջ–XII դ–ի սկզբի տաղերգու։ Պահպանվել է «Տաղ գերեզմանական վասն փոխման երանեալ և սուրբ կաթողիկոսին...» ծավալուն քերթվածը (գրել է 1105–ին՝ *Գրիգոր Բ Վկայասեր* կաթողիկոսի մահվան կապակցությամբ), որով հայ իրականության մեջ սկզբնավորել է կենսագր. պոեմի տարատեսակը։

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Քաջ, **Կարմիր Վարդան** (388/391–451), Հայոց սպարապետ՝ 422–ից, Սասանյան Պարսկաստանի դեմ 450–451–ի ազատագր. շարժման (*Վարդանանց պատերազմ*) առաջնորդ։ Սպարապետ Համազասպ Մամիկոնյանի և *Սահակ Ա. Պարթևի* դուստր Սահականույշի որդին։ Հոր մահից հետո վարել է Մամիկոնյանների նախ–յան տանուտերությունը։ 432–ից՝ մարզպան. Հայաստանի զորքերի սպարապետ։ 442–ին Պարսից Հազկերտ II արքան Հայոց այրուձին Վ. Մ–ի գլխավորությամբ հանել է Հայաստանից և ուղարկել քուշանների (հոների) դեմ պատերազմի։ 449–ին Վ. Մ. վերադարձել է հայրենիք, մասնակցել Արտաշատի ժողովին, որը մերժել է քրիստոնյա հպատակներին զրադաշտականություն պարտադրող Հազկերտ II–ի հրովարտակը։ Այդ պատճառով Վ. Մ. կանչվել է Տիզբոն և կանգնել արքունի ատյանի առաջ։ Առերես հավատափոխության գնով վերադարձել է հայրենիք և գլխավորել սկսված համաժող. ապստամբությունը։ 450–ին ջախջախելով և երկրից վտարելով պարսիկ մոգերին ու նրանց աջակցող զորքերին՝ թոթափել է Սասանյանների տիրապետությունը։ Նույն թվականին Խաղխաղ ք–ի մոտ ծանր պարտության է մատնել պարսկ. զորքին և հոների, աղվանների ու վրացիների հետ ռազմ. դաշինք կնքել Պարսկաստանի դեմ, և վերադարձել հայրենիք։ Վ. Մ. զոհվել է *Ավարայրի ճակատամարտում*։

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ, Փոքր Վարդան, զորավար, ազատագր. շարժման առաջնորդ՝ 571–576–ին։ *Վարդ Մամիկոնյանի* թոռը, Վասակի որդին։ Վ. Մ. հակադրվել է մարզպան. Հայաստանում պարսից Սասանյան արքունիքի վարած քաղ–յանը։ Ռազմ. դաշինք կնքելով Բյուզ. կայսրության, աբխազների, ալանների, վրացիների և աղվանների հետ՝ զինված պայքար է մղել պարսկ. տիրապետության դեմ։ Հայաստանը, Վիրքը և Աղվանքը թոթափել են պարսկ. տիրապետությունը և անցել Բյուզանդիայի հովանավորության տակ։ Վ. Մ. 572–ին մեկնել է Կ. Պոլիս և ծառայության մտել բյուզ. բանակում։ Նույն թվականին վերադարձել է հայրենիք և 4 տարի կռիվներ մղել պարսից նվաճողների դեմ։

ՎԱՐԴԱՆԱԿԵՐՏ, ք. Փայտակարան նախ–ի Վարդանակերտ գվո–ում (ընդգրկել է Երասխից արլ. տարածվող Սիւղանի դաշտի մեծ մասը), վերջինիս կենտրոնը՝ Ատրպատականի հս. սահմանագլխին։ Հայոց թագավորության համար ունեցել է ռազմավար. կարևոր նշանակություն։ Ներկայում Վ–ի տեղում Ալտան բերդի ավերակներն են։

ՎԱՐԴԱՆԱԿԵՐՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 703, տեղի է ունեցել հայկ. զորաբանակի և Հայաստանը նվաճած արաբ. զորքերի միջև Երասխի ափին՝ Վարդանակերտ ավանի (ենթադրվում է՝ ներկայիս ՀՀ Արմավիրի մարզի Մարգարա գ–ի մերձակայքում) մոտ։ Երասխի սառույցը կոտրվել է, և փախուստի դիմած թշնամու զինվորների զգալի մասը հեղձամահ է եղել։

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄ 450–451, հայ ժողղ–ի ազատագր. պայքարը պարսկ. տիրապետության դեմ։ 447–ին պարսկ. արքունիքն ավելացրել է *Մարզպանական Հայաստանից* գանձվող հարկերի չափերը, սահմանափակել հայ նախարարների ու հոգևորականների իրավունքները։ 449–ին *Հազկերտ II*–ը հատուկ հրովարտակով հրամայել է կրոնափոխել քրիստոնյա բոլոր հպատակներին, որն Արտաշատի ժողովում (449) հայ նախարարներն ու հոգևորականները մերժել են։ Նույն թվականի գարնանը Հայոց, Վրաց և Աղվանից (որոնք նույնպես մերժել էին առաջարկը) ներկայացուցիչները կանչվել են Տիզբոն՝ պատասխանատվության։ Նրանք ստիպված դիմել են առերես հավատուրացության։ Հայ նախարարներին 700 մոգի և հսկիչ զորախմբի ուղեկցությամբ Հազկերտ II–ն ուղարկել է Հայաստան։ 449–ի սեպտ. վերջին Բագրևանդ գվո–ի Անգղ ավանում հայ շինականները *Դևոնդ Երեցի* գլխավորությամբ կոտորել են նրանց։ Բռնկվել է պատմբություն, որի առաջնորդ է ընտրվել *Վարդան Սամիկոնյանը*։ Այդ ընթացքում պարսից կողմը, գիջումների խոստումով (դավանանքի ազատություն, հարկերի թեթևացում ևն) *Վասակ Սյունուն* հեռացրել է ապստամբական ճամբարից։ 451–ի ապրիլին պարսկ. զորքերը ներխուժել են Հայաստան։ Ճակատամարտը տեղի է ունեցել մայիսի 26–ին (տես *Ավարայրի ճակատամարտ 451*), որտեղ հայկ. կողմը պարտվել է, բայց պարսկ. արքունիքը հարկադրված է եղել ճանաչել Մարզպան. Հայաստանի ինքնավարությունը։ Այդ պատերազմում զոհված մարտիկները ճանաչվել են «Հայրենիքի սուրբ նահատակներ» հավաքական անունով (2015–ին ՀԱԵ–ն նրանց սրբադասել է), իսկ նրանց հիշատակի օրը ներառվել է հայկ. ամենամյա տոների ցանկում (տես *Վարդանանց տոն*)։

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆ, Սասանյան Պարսկաստանի դեմ *Վարդանանց պատե-*

րազմում (տես նաև *Ավարայրի ճակատամարտ 451*) զոհված 1036 երևելի մարտիկների հիշատակին նվիրված ամենամյա կրոն. տոն: Նշվում է մարտի 1-ին:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ալբերտ Հրաչի (ծ. 1954), քանդ.: ՀՀ վաստ. նկարիչ (2013): Հեղինակ է «Տիրամայր» (1989, Այովա, ԱՄՆ), «Տոտեմ» (1999, «Բեռլին» հյուրերի տուն, Գյումրի), «Մայրություն» (1999, Սպիտակ), «Նանե» (2000, Գյումրի, «Նանե» հոթել), «Զոն խաղաղության: Պուլսար» (2006, Բոխում, Գերմանիա), «Ձի եղիցին մի» (2016, Գյումրի, Յոթ վերք եկեղեցում) և այլ գործերի:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ալբերտ Վիրաբի (ծ. 1952), անասնաբույժ: Անասնաբուժ. գիտ. դ-ր (1998), պրոֆ. (2003): Աշխ-ները վերաբերում են կենդանիների վիրաբուժ., օրթոպեդ. հիվանդությունների բուժման և կանխարգելման հարցերին:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ալլա Վազգենի (ծ. 1959), դերասանուհի: ՀՀ վաստ. արտիստ (2009): Արմեն *Մարության* կինը: 1981-ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասանուհի (Հասմիկ՝ Ն. Զարյանի «Հացավան», Սյուզան՝ Ռ. Թոմայի «Ութ սիրագորով կանայք», Աննա՝ Կ. Խոդիկյանի «Կինն անձրևից հետո», Ցուպավինա՝ Ա. Ն. Օստրովսկու «Գայլեր և ոչխարներ», Արուս՝ Ն. Շահնազարյանի «Իմ ծաղկած դեղձենի», Բլանշ՝ Վ. Շեքսպիրի «Ջոն արքա», ևն): Հեռուստատեսությամբ վարել է «Բարի գիշեր» հաղորդումը (1986–96):

ՀԹԳՄ «Արտավազդ» մրց. (2003, 2016):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Աղասի Հարությունի (1891–1968), հաս-պետ. գործիչ, խմբ.: 1921-ից եղել է ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի բաժնի վարիչ, «Զակկնիգա» հրտչ-յան նախագահ, Թիֆլիսի *«Մարտակոչ»* և «Պրոլետար» հայ. թերթերի պատ. խմբ., միաժամանակ՝ Անդրկովկասի հեռագր. գործակալության տնօրեն, 1927–28-ին՝ Թիֆլիսի «Հայարտան» նախագահ, 1928-ին՝ *«Կոմունիստ»* (Բաքու) թերթի խմբ., 1936-ից՝ Հայկ. հեռագր. գործակալության (*Արմենպրես*) տնօրեն: Հեղինակ է պատմվածքների, բանաստեղծությունների և պոեմների ժող-ների, հուշագրության:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Աղվան Արշավիրի (ծ.1958), բանաստեղծ, քաղ. գործիչ, խմբ.: 1991–93-ին՝ ՀՅԴ *«Երկիր»* օրաթերթի, 1996–99-ին՝ «Երևան» տեղեկատվ. կենտրոնի գլխ., խմբ.: 2003–08-ին՝ ՀՀ աշխ-ի և սոցիալ. հարցերի նախարար: 2001–03 և 2012-ից՝ ՀՀ ԱԺ պատգմ.: 2015-ից՝ ՀՅԴ Հայաստանի ԳՄ ներկայացուցիչ: Հեղինակ է «Քարե սեղան» (1986), «Ելք երկրից» (2014) բանաստեղծությունների ժող-ների: ՀԼԿԵՄ ԿԿ գր. մրց. (1989), ՀՀ «Անանիա Շիրակացի» մեդալ (2006):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Անուշավան Հայրապետի (1879–1954), դրամատուրգ: Հեղինակ է «Դրամատիկական երկեր» (1937), «Պիեսներ» (1949) ժող-ների:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Արամ Համբարձումի (ծ. 1954), ֆիզիկոս: Տեխ. գիտ. դ-ր (1994), պրոֆ. (1995): ՀՃԱ (1998), ՄՃԱ (1999) անդամ: 1987–2000-ին՝ «Տրանզիստոր» ԳԱՄ-ի, 2007-ից՝ Բարձր տեխնոլոգիաների զարգացման գիտատեխ. կենտրոնի «Վիամփեր» տեխնոպարկի տնօրեն: Հետազոտել է մեծ չափերի կիսահաղորդչ. կառուցվածքներում էլեկտրոնախոռոչ. պլազմայի եռաչափ տարածման առանձնահատկությունները՝ ներարկման չափավոր և բարձր մակարդակների պայմաններում:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Արիստակես (1887–1941), լեզվաբան, բանասեր, խմբ.: Քհն. (1910): 1924–30-ին՝ *«Հանդէս ամսօրեայ»*-ի խմբ. (Համազասպ *Ոսկյանի* հետ): Հեղինակ է «Բառաքննական դիտողություններ» (պր. 1–4, 1913–23), «Դասական մանր բնագիրներ եւ ձեռագրական համեմատութիւններ» (հ. 1, 2, 1913, 1923), «Նիւթեր հայերէն բառագրութեան» (1920), «Քննական հրատարակութիւն մատենագրութեան եւ թարգմանութեան նախնեաց հայոց» (1930) աշխ-ների: Թարգմանել է Յ. Մարկվարտի գործերից:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Արման Հայկազի (1930–2015), դրամատուրգ, երաժիշտ: Աբսուրդի դրամայի ներկայացուցիչ: Հեղինակ է «Թոխորը» (1977), «Մամլեկը» (1977), «Ագռաւուկը» (1978), «Շաղամաթը» (1979), «Խպլիկը» (1980), «Ճոկանը» (1980), «Կանկրուկը» (1981), «Պախուրցը» (1988), «Հեղձուկը» (1989), «Հրոտից» (1990), «Երնջակը» (1990), «Ախացել» (2000, վերջին երկուսը՝ բեմ.՝ Երևանում 2000-ին) թատերգությունների:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2012):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Արմեն Հրաչիկի (ծ. 1957), ակնաբան: Բժշկ. գիտ. դ-ր (2002), պրոֆ. (2004): Աշխ-ները վերաբերում են աչքի արհեստ. ոսպնյակների տեղադրման, ապակենման մարմնի ու ցանցաթաղանթի հիվանդությունների և միկրովիրաբուժության խնդիրներին:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Արմեն Վաղարշակի (1923–1985), նկարիչ: ՀԽՍՀ վաստ. նկարիչ (1967): 1955–60-ին՝ Մոսկվայի «Սանպրոսվետ» ԳՀԻ և նրա հրտչ-յան գլխ. նկարիչ ու գեղ. խմբ., 1972–74-ին՝ Հ. Կոջոյանի և Ա. Սարգսյանի տուն-թանգարանների տնօրեն: Հեղինակ է «Երևանի առավոտը» որմնանկարի, «Հայաստան» խճանկարի (1950–51, «Արմենիա» խանութ, երկուսն էլ՝ Մոսկվա), «Մարդիկ, զգոն եղեք» նկարաշարի (1960–62), «Գ. Գասպարյան» դիմանկարի, «Օգնի՛ր» (1973) պլակատի և այլ գործերի:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Արմենակ Երեմի (ծ. 1955), քանդ.: Երեմ *Վարդանյանի* որդին: Հեղինակ է «Սումգայիթ» (1988), «Քավարանի դուռը», «Դրախտի դուռը» (ոսկե մեդալ, 1996) հարթաքանդակների, «Ռոն Կիխոտը և Սանչո Պանսան» (2000), «Ադամն ու Եվան» (2004) քանդակների, «Միմինո» խմբաքանդակ-հուշարձանի (Ֆ. Մկրտչյան, Ե. Լեոնով, Վ. Կիկաբիձե, 2011, Դիլիջան) և այլ գործերի: ՀԼԿԵՄ մրց. (1988):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Արշակ Լյուդվիգի (ծ. 1957), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (2013), պրոֆ. (2016): Աշխ-ները վերաբերում են կինետիկ. երևույթներին՝ պինդմարմնային քվանտ. կառուցվածքներում, պոլառոնային վիճակներին՝ կիսահաղորդչ. նանոկառուցվածքներում, տարբեր փոխազդեցություններով պայմանավորված քվազիմասնիկների դինամիկային՝ ցածր չափայնությամբ էլեկտրոն. համակարգերում: ՀՀ նախագահի մրց. (2013):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Արտակ Արմենակի (1896–1993), ռազմ. գործիչ, գեն-լեյտ. (1954): ԱՀՊ-ի ժամանակ Հայկ. կամավոր. 4-րդ ջոկատի կազմում մասնակցել է Սարիղամիշի գործողությանը: 1928-ից աշխատել է բանակի կապի վարչության գիտատեխ. կոմիտեում:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Բարդուղ Եղիայի (1897–1987), նկարիչ: ՀԽՍՀ վաստ. նկարիչ (1965): Բուխարեստում ստեղծած նկարաշարը (մոտ 80 նկար՝ «Փողոց Բուխարեստում», «Տեյ լիճը» ևն) նվիրել է ՀԱՊ-ին: 1946-ին հայրենադարձել է: Հեղինակ է հյութեղ, զուսպ գույներանգով բնանկարների («Քիմզործարանը Կիրովականում», 1963, «Սևանա կղզին», 1965, «Բջնի», 1967, ևն):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Գագիկ Ահարոնի (ծ. 1948), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1985), պրոֆ. (1988): 1998-ից՝ ԱՄՆ-ում: Առաջադրել է քվանտ. բյուրեղների մանրադիտակ. տեսության, քվազիմասնիկներով պայմանավորված բարձրջերմաստիճան. գերհաղորդականության մեխանիզմ:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Գագիկ Իշխանի (ծ. 1955), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (2010), պրոֆ. (2012): 2002–06-ին՝ ՀՀ առևտրի և տնտ. զարգացման փոխնախարար, 2011-ից՝ ՀՊՏՀ պրոռեկտոր: Աշխ-ները վերաբերում են գիտելիքահենք տնտ-յան ձևավորման, հնարավորությունների ու մարտահրավերների, շուկայագիտ-յան հիմալիր խնդիրներին:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Գայանե Սարգսի (ծ. 1954), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դ-ր (1997), պրոֆ. (2005): Սարգիս Հ. *Վարդանյանի* դուստրը, Ռուբեն Ս. *Վարդանյանի* քույրը: Աշխ-ները վերաբերում են ալոքսանային շաքարախտի ժամանակ լոշտակի լուծամզվածքի և չհագեցած եռօքսիթթունների նշանակությանը՝ լիպիդների նյութափոխանակության որոշ շարժընթացների կարգավորման գործում: Զբաղվել է նաև օքսիդախթանիչ նյարդաշարժահաղորդ շարժընթացի խանգարման և շաքարախտ. նեյրոպաթիայի կենսաքիմ. մեխանիզմների ուսումնասիրությամբ: ԵՊԲՀ ոսկե մեդալ (2005):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Գերվասյա Ալեքսեյի (ծ. 1927), նկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (1987): Հեղինակ է «Կենդանաբանական այգում» (1966), «Գութանի երգը» (1970), «Հիշողություններ պատերազմից» (1993), «Թրաշուշաններ» (2003), «Եղրևանիներ» (2005) և վառ կոլորիտով այլ կտավների:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Գրիգոր Մինասի (1868–1938), քաղ. և պետ. գործիչ: Մինչև 1905-ը՝ ՍԴՀԿ անդամ: 1895-ին դատապարտվել է 15-ամյա տաժանակրության, 1896-ին ընդհ. ներմամբ ազատվել: 1915-ին զորակոչվել է Կովկաս. ռազմաճակատ: Կազմակերպել է Թավրիզից 6 հզ. հայ գաղթականների վերադարձը Զանգեզուր: Եղել է եկեղեց. գործերով ՀԽՍՀ ԺԿԽ ներկայացուցիչ: 1924-ից՝ ՀՕԿ-ի պետ. քարտուղար, ապա՝ գլխ. վարչության նախագահ: 1926-ին Հայաստան է բերել զորավար Անդրանիկի սուրը:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Գևորգ (Գեորգի) Անդրեյի (1924–2012), հետախույզ, ՊԱԿ-ի գնդ.: ԽՄ հերոս (1984): 1943-ին Թեհրանի խորհրդաժողովի ժամանակ մասնակցել է 3 տերությունների ղեկ-ների (Ի. Վ. Ստալին՝ ԽՍՀՄ, Ֆ. Ռուզվելտ՝ ԱՄՆ, Ու. Չերչիլ՝ Մեծ Բրիտանիա) անվտանգության ապահովմանը:

Լենինի, ԽՍՀՄ Կարմիր դրոշի, ՀՄՊ 2-րդ աստիճանի և այլ շքանշաններ:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Գևորգ Գրիգորի (1923–2002), նկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (1967): 1951–86-ին՝ ԵՊՀԹ գլխ. նկարիչ: Զևավորել է Կ. Գոցցիի «Ագռավ» (1959), Գ. Յաղջյանի «Ոսկի քաղաք» (1954), Է. Ռոստանի «Ռոմանտիկներ» (1963), Բ. Վասիլևի «Իսկ արշալույսներն այստեղ խաղաղ են» (1985) և այլ բեմադրություններ:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Եղիշե Գևորգի (1905–1958), խորհրդ. կուս. և պետ. գործիչ: 1947–ից՝ Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ, 1952–ից՝ ՀԽՍՀ շինանյութերի արդ–յան նախարար: 1947–51–ին՝ ՀԽՍՀ ԳԽ Նախագահության անդամ:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Երեմ Սրապիոնի (1922–1985), քանդ.: ՀԽՍՀ վաստ. նկարիչ (1972): Արմենակ *Վարդանյանի* հայրը: Ստեղծագործել է հաստոց. և մոնումենտալ քանդ–յան բնագավառներում: Հեղինակ է «Սպասում: Մայրը» (1967) դիմաքանդակի, Ղ. Աղայանի (1959, Երևանի համանուն դպրոցի առջև), Ն. Ստեփանյանի (1960, ԼՂՀ, Ասկերանի շրջան) կիսանդրիների, Մովսես Խորենացու հուշարձանի (1965, Մոնդ–ի առջև) և այլ գործերի:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Զավեն Ղևոնդի (1907–1977), կլառնետահար, երաժշտագետ: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1940): 1938–41–ին՝ Հայֆիլհարմոնիայի տնօրեն: Համամիութ. մրցույթի դափնեկիր (1935, Մոսկվա):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Զավեն Նազարեթի (ծ. 1945), դիրիժոր, հաս. գործիչ: Երևանի կամեր.նվագախմբի հիմնադիր–գեղ.ղեկ., դիրիժոր (1979–90), 1994–2000–ին՝ ԵՕՔԹ–ի դիրիժոր: 2000–ից ՀՀ–ում կազմակերպել է Բախի և հոգևոր երաժշտության փառատոներ, Շեքսպիրյան օրեր: 2003–ից՝ Էկվատորի Կունկա ք–ում, որտեղ հիմնադրել է օպեր. թատրոնը: Այսրկովկաս. մրցույթի դափնեկիր (1969), հանրապետ. մրցույթի ոսկե մեդալ (1969, Երևան):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Զարեհ Վահեի (ծ. 1944), հաստոցաշինության բնագավառի գիտնական: ԽՍՀՄ գյուտարար (1986): Աշխ–ները վերաբերում են ռոտորների հավասարակշռման նոր տեխնոլոգ. շարժընթացների և հաստոցների ստեղծմանն ու արդ–յան մեջ ներդրմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1985), ԽՍՀՄ ԺՏՆՑ արծաթե (1985), բրոնզե (1975, 1986) մեդալներ:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Էդուարդ Սարգսի (ծ. 1946), նկարիչ: Պրոֆ. (2005): Հեղինակ է «Աշնան արև» (1990), «Մարութա սարին մի աստղ ընկավ. Մ. Գալշոյան» (1995), «Հին Թալին» (1998), «Կարոտ» (2000), «Ամառ» (2005), «Առաջին ձյուն» (2006) և այլ գործերի, որոնց բնորոշ է եթերային, հոգևոր պայծառությունը:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Էդուարդ Սուրենի (ծ. 1940), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ դ–ր (1989), պրոֆ. (1993): 1994–2011–ին՝ ՀՀ ԳԱԱ ֆիզ. հետազոտությունների ինստ–ի տնօրեն: ՌԲՆԳԱ ՀԲ ակադ. (1998): Աշխ–ները վերաբերում են լազեր. ֆիզիկային: Մշակել է լիթիումի յոդատի բյուրեղների աճեցման տեխնոլոգիա: Տարբեր ֆիզ. երևույթներ է հայտնաբերել խառնուրդներով լիթիումի նիոբատի բյուրեղներում և սեգնետոէլ. բարակ թաղանթներում:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Էմմա Սերոբի (1921–2009), դերասանուհի: ՀՀ ժող. արտիստ (1975): Հրաչյա *Ղափլանյանի* կինը, Տաթևիկ *Ղափլանյանի* մայրը: 1941–68–ին՝ ԵՊՀԹ, 1968–ից՝ ԵԴԹ դերասանուհի (Անտոնիդա Վասիլևնա՝ Ֆ. Մ. Դոստոևսկու «Խաղամոլը», Թագուհի՝ Պ. Զեյթունցյանի «Աստվածների կանչը», Լեդի Միլֆորդ՝ Ֆ. Շիլլերի «Մեր և Խարդավանք», Մեղեա՝ Ժ. Անույի «Մեդեա», Ֆիլումենա՝ Դե Ֆիլիպոյի «Ֆիլումենա Մարտուրանո», ևն): ՀՀ Պետ. մրց. (1981):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Թենի Սերյոժայի (ծ. 1957), նկարչուհի: ՀՀ վաստ. նկարիչ (2010): Հեղինակ է «Երրորդություն» (1996), «Խորհրդավոր ընթրիք Եգիպտոսում» (1998), «Ժամանակի դեսպան» (2000), «Տաճար» (2002) և այլ գունանկարների: Զևավորել է Վ. Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ» (1987, ԵՊՀԹ), Է. Շանթի «Հին աստվածներ» (1990, Համազգ. թատրոն) և այլ բեմադրություններ: X միջազգ. բիենալեի ոսկե մեդալ (2007, Կահիրե):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ժիրայր Գրիգորի (1911–1989), կինոօպերատոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1963): Հայֆիլմում նկարահանել է «Երկիր Հայրենի» (1945), «Աստ մեծ ճշմարտության մասին» (1970) վավերագր., «Ոսկե գլիկը» (1955), «Ինչու՞ է աղմկում գետը» (1959), «Հուշարձան» (1971) գեղ. և այլ ֆիլմեր:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ժիրայր Հմայակի (ծ. 1952), բուսաբան–ծառագետ: Կենսբ. գիտ. դ–ր (1990), պրոֆ. (1994): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2010): ՀՀ ԳԱԱ բուսաբ–յան ինստ–ի տնօրեն (2006–ից): Աշխ–ները վերաբերում են արժեքավոր և հազվագյուտ ծառատեսակների ներմուծման, բուսահավաքածուների ստեղծման, չոր. պայմաններում բնական դենդրոպարկերի հիմնադրման հիմունքների մշակմանը: Վ–ի նախաձեռնությամբ հրատարակվել է «Հայկական ՍՍՀ բուսաբանական այգիների և դենդրոպարկերի ծառերի ու թփերի անոտացված գրացուցակը» (ռուս., 1985):

ՀՀ ԳԱԱ գովեստագիր (1985), վաստակագիր (2008):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Իվան Աբգարի (1888–1937), գինվ. կոմիսար: ՌՍԴԲԿ անդամ՝ 1906–ից: Մասնակցել է Ռուսաստանի քաղաքաց. պատերազմին: 1920–ին՝ Հայկ. դիվիզիայի հրետան. գնդի կոմիսար, դիվիզիայի քաղ բաժնի պետ, դիվիզիայի կոմիսար:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Իրմա Արմենակի (ծ. 1939), ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դ–ր (1982), պրոֆ. (1984): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1986–ից): Աշխ–ները վերաբերում են այլասերված ճյուղավորումներով ընթացող օրգ. միացությունների օքսիդացման ռեակցիաների կինետիկային և մեխանիզմներին, նաև գերօքսիդային միացությունների տրոհման մեխանիզմին և ռեակցիոնունակությանը:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Լավրենտ Վաղարշակի (ծ. 1948), նկարիչ: Հեղինակ է ինքնատիպ ոճով բազմաժանր գործերի («Մանկության երազ», «Նազելիները և մուսան», երկուսն էլ՝ 1989, «Նորավանք», «Սպիտակ այծի երկրպագումը», երկուսն էլ՝ 1990, «Բալետ–փորձ», 1998, ևն):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Լիլիա Մարտինի (ծ. 1942), ազգագրագետ, պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (2005): Նազելի *Լիսիցյանի* և Մարտին *Վարդանյանի* դուստրը: Աշխ–ները վերաբերում են հիմնականում Ստեփան *Լիսիցյանի* ազգագր. ժառանգության, հարսանեկան, թաղման ավանդույթների արարողակարգերի ուսումնասիրմանը:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Լիլիա Վարդանի (ծ. 1923), անատոմ: Բժշկ. գիտ. դ–ր (1983), պրոֆ. (1984): ՀՀ–ում առաջինն է մշակել և կիրառել գլխուղեղի անոթների՝ առանց ներարկման հետազոտման նոր ուղղություն, նաև անոթների բազմագույն ներկման եղանակ, որը հնարավորություն է տալիս տարբերակելու գլխուղեղի փափուկ պատյանի կառուցվածք. առանձին տարրերը: Տվյալներ է ստացել տեսող. և լսող. զգայախաբություններով տառապող հոգեկան հիվանդների գլխուղեղի անոթների ձևաբան. փոփոխությունների վերաբերյալ, որն ունի ախտորոշիչ ու բուժիչ նշանակություն:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Լևոն Եղիշի (ծ. 1926), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1969), պրոֆ. (1972): ՀԽՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1983): ՀՏՀ ռեկտոր (1984–91): Աշխ–ները վերաբերում են մեքենաշին. ձեռն–ներում արտադր. շարժընթացների կազմակերպման, դրանց արտադր. կառուցվածքի, արտադր. ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացման հարցերին:

ՀՀ տնտեսագիտ. և գիտատեխ. ընկ–ներ.ի նախագահ (1982–87, 1986–89):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Լևոն Մկրտչի (ծ. 1924), հակահետախույզ: ԽՍՀՄ ՊԱԿ–ի գեներալ–մայոր: ՀՄՊ–ի տարիներին պայքարել է գերմ. օդ. դեսանտների դեմ, ապա ծառայել է Բառնաուլում՝ որպես ՊԱԿ–ի Ալթայի երկրամասի վարչության 5–րդ բաժնի պետ: ԽՍՀՄ ՊԱԿ–ի տեսչական վարչության պետի տեղակալ (1979–83):

ԽՍՀՄ Կարմիր դրոշի (2) շքանշան:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Լևոն Պարույրի (1929–2015), ռազմ. հետախույզ: ԽՍՀՄ ԶՈՒ փոխծովակալ (1981): Ծառայել է Բալթ. նավատորմում, այնուհետև՝ ռազմ. հետախուզությունում՝ որպես նավատորմի սպա: Աֆղանստանի և Իրանի համար լարված տարիներին Վ. գործուղվել է Քաբուլ և Թեհրան:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Լևոն Սուրենի (1948–2013), քանդ.: Ստեղծագործել է մոնումենտալ քանդ–յան բնագավառում [«Երևան», 1981, հարթաքանդակ, փայտ, Երևանի քաղաքապետարան, «Աշխատանքի երգ», 1985, տուֆ, Երևանի մետրոպոլիտենի Գործարան. կայարան, «Մտածողներ», 1986, տուֆ, ք. Վոլգոդոնսկ, ՌԴ, «Աստծու աչք», 1998, բրոնզ, Ռավեննա (Իտալիա), ևն]:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Կամո (Կառլեն) Սիրակի (1928–2000), խմբ., հաս–քաղ. գործիչ: 1967–72–ին՝ *«Հայրենիքի ձայն»* շաբաթաթերթի, 1973–79–ին՝ *«Ագիտատոր և պրոպագանդիստ»* հանդեսի, 1979–90–ին՝ *«Երևկոյան Երևան»* օրաթերթի խմբ.:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Կարո (Կարապետ) Արտուշի (ծ. 1972), գրականագետ, գրող: ՀՀ արվ. վաստ գործիչ (2015): 2011–ից՝ Ե. Չարենցի անվ. ԳԱԹ–ի տնօրեն: Հեղինակ է «Սասուն աշխարհի բանասացը» (2000) մենագրության, «Մի կտոր երկինք» (2012), «Հատուցման տասներեք ղողանջ» (2014) պատմվածքների ժող–ի, «Պայթյուններ Թուրքիայում և… ոչ միայն» (2017) վեպի:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Հակոբ Արմենակի (1928–1981), ջութակահար: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1963): Պրոֆ. (1980): 1950–ից՝ Հայֆիլհարմոնիայի մենակատար: Երևանի կոնսերվատորիայի լար. քառյակի ղեկ. (1953–81): Խմբագրել է հայ կոմպոզիտորների ջութակի և անսամբլ. երկեր, եղել դրանց առաջին կատարողը:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Հենրիխ Սենեքերիմի (ծ. 1934), երկրաբան: Երկրբ–հնքբ. գիտ. դ–ր (1974), պրոֆ. (1978): ՌԴ գիտ. և տեխ. վաստ. գործիչ: Աշխ–ները վերաբերում են ստորերկրյա ջրերի առաջացման, տարածման, պաշարների հաշվարկման խնդիրներին: Գիտ. հայտնագործության («Վարդանյան–Կուլիկովի» էֆեկտ) հեղինակ է (1982): Զրաերկրաբանների միջազգ. ընկերակցության նախագահ (1984–92), ՌԲՆԳԱ անդամ (1990), փոխնախագահ:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Հենրիկ Արամայիսի (1930–1995), ֆիզիոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր, պրոֆ.:

ՌԲԳԱ թղթ. անդամ (1988): Աշխ-ները վերաբերում են նյարդաֆիզիոլոգիայի հարցերին, բացահայտել է մարդու և կենդանիների կենտր. շարժող. խանգարումների ներքին քիմ. վերականգնման հնարավորությունը, ներդրել գանգուղեղ. վնասվածքների և հետկաթված. խանգարումների բուժման ախտագենետիկ. մեթոդ:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Հովսեփ (1815–1879), գրող, պատմաբան, խմբ.: 1837-ից (շուրջ 25 տարի) որպես թարգմանիչ աշխատել է Օսմ. կայսրության նավատորմի նախ-յունում: 1852–83-ին՝ ***«Մէ ճմաայր Հավատիս»***, 1877–85-ին՝ ***«Թէրճեմանը Էֆքեար»*** հայատառ-թուրք. պարբ-ների խմբ.: Հեղինակ է «Ագապի» (1851), «Շատախօսը» (1852) վեպերի, «Նապոլեոն Բոնապարտի պատմութիւնը» (մաս 1–6, 1855–56), «Սահմանադրական ճշմարտութիւններ...» (1863), «Արևելեան պատերազմի պատմութիւնը» (1871) աշխ-ների, թարգմ-յունների:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Մարատ Ենոքի (1932–1993), հոգեբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (1968), պրոֆ. (1970): ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1988): ԽՍՀՄ ԲԳԱ հոգեբուժության ԳՀԻ տնօրեն (1987–93), միաժամանակ՝ ՌԲԳԱ Հոգեկան առողջության գիտ. կենտրոնի հիմնադիր-ղեկ.: Զբաղվել է շիզոֆրենիայի ընթացքի կլինիկակենսբ. և ժառանգ. օրինաչափությունների, հոգեկան հիվանդների կենսբ. հեղուկների թունավոր հատկությունների ուսումնասիրությամբ:

Հոգեբույժների համաշխ. ընկ-յան քարտուղար (1971–79), Նյու Յորքի ԳԱ անդամ (1988–ից):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Մարտին Սիմոնի (1900–1991), քիմիկոս: Լիլիա ***Վարդանյանի*** հայրը: ԽՍՀՄ-ում պլաստմասսաների արդ-յան կազմակերպիչներից: ԽՍՀՄ պատվ. քիմիկոս (1980): Մասնակցել է Երևանում վինիլացետատի արտադր-յան կազմակերպմանը:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Յուրի Լազարի (ծ. 1936), ֆիզիկոս-տեսաբան: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1972), պրոֆ. (1974): Կարևոր արդյունքներ է ստացել գերխիտ այլասերված նյութի վիճակի հավասարման՝ սպիտակ թզուկների, բարիոնային և տարօրինակ աստղերի կայունության, բաբախումների, սառեցման, գրավիտացիոն ճառագայթման վերաբերյալ:

ՀՀ «Մնանիա Շիրակացի» մեդալ (2012):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Յուրի (Յուրիկ) Նորայրի (ծ. 1956), ծանրորդ, մարզ. գործիչ: ԽՍՀՄ ս. վ. (1976), ս. վ. վ. (1977): Մանկավարժ. գիտ. դ-ր (1994), պրոֆ. (1997): Աշխարհի լավագույն ծանրորդ (1979–81), Հայաստանի № 1 մարզիկ (1976–85): Սերգեյ ***Վարդանյանի*** եղբորորդին և սանը: ԽՍՀՄ բազմակի, Եվրոպայի 8-ակի (1977–83), աշխարհի 9-ակի (1977–85), օլիմպ. խաղերի (1980) չեմպիոն: Ընդհ. առմամբ նվաճել է 113 ոսկե մեդալ: 2013–14-ին՝ ՀՀ սպորտի նախարար, 2014–16-ին՝ Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, 2016-ից՝ ՀՀ նախագահի խորհրդական:

Լենինի, ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի, ՀՀ և ԼՂՀ «Մր Մեսրոպ Մաշտոց» շքանշաններ:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Նվարդ Պողոսի (ծ. 1940), թարգմանչուհի: Թարգմանել է ֆրանսիացի դասականների (Ժ. Ռասին, Ա. Դոդե, Ֆ. Սագան, Ստենդալ, Պ. Էլյուար, Ժ. Սանդ և ուր.) ստեղծագործություններից: Հեղինակ է «Բաց հանգույցներ» (2009) վեպի, «Զրուցասեր գունապնակ» (2012) պատմվածքների ժող-ի: ՀԳՄ և Սբ Էջմիածնի «Կանթեղ» գր. մրց. (2017):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Շավարշ Հրաչիկի (ծ. 1950), կինոօպերատոր, ռեժ.: Նկարահանել է «Ամենատաք երկիրը», «Կտոր մը երկինք» (երկուսն էլ՝ 1982), «Շանապարհ դեպի Սասունցի Դավիթ» (1987) գեղ., «Թատերական հրապարակ» (1988), «Հայաստան», (1990), «Թիրախ» (2001, նաև ռեժ.), «Արևի տաճար» (2008) վավերագր. ֆիլմերը (բոլորը՝ Հայֆիլմ), 1988–95-ին՝ Արցախյան վավերաֆիլմեր և պատերազմ. նյութեր (շուրջ 1200 ժ): ՀՀ Արիության (1996), ՄՆ ոսկե (2010) մեդալներ:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Շոթա Արսենի (ծ. 1946), դատ. բժիշկ-փորձագետ: Բժշկ. գիտ. դ-ր (1989), բժշկագիտ. և իրավունքի պրոֆ. (1990): 1993–2012-ին՝ Հանրապետ. դատ. բժշկության ԳՀ կենտրոնի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են արևի ակտիվության 11-ամյա և փոքր պարբերաշրջանների հետ կապված սպանությունների, ինքնասպանությունների, դժբախտ պատահարների, հանկարծամահության հարցերին: ՀՀ գլխ. դատ. բժիշկ-փորձագետ (1993–2012):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ռաֆիկ Արսենի (1935–2000), աստղաֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1981), պրոֆ. (1991): 1998–2000-ին՝ Վիկտոր ***Համբարձումյանի*** թանգարանի (Բյուրական) տնօրեն: Հայտնաբերել է T ցուլի տիպի փոփոխ. աստղերի սեփ. լույսի բևեռացման երևույթը, կատարել միջաստղ. տարածության բևեռաչափ. ուսումնասիրություններ: Զբաղվել է նաև գալակտիկաների խմբավորումների ուսումնասիրությամբ. հայտնաբերել և բացահայտել է գալակտիկ. հեռավոր կույտեր ու շղթաներ:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ռաֆիկ Հովակիմի (ծ. 1940), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր, պրոֆ. (1994): 1988–92-ին՝ ՀՊՊԹ տնօրեն: Աշխ-ները վերաբերում են Հայոց տոմարական՝ եղանակին, IV–XVIII դդ-ի Հայոց տոնացույցին, V–XV դդ-ի Հայաստանի չափ ու կշռի և այլ խնդիրների:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ռոբերտ Աղասու (ծ. 1949), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1989), պրոֆ. (1991): Կանխատեսել է ձայնապլաստիկ. երևույթը մետաղներում, առաջադրել կիսահաղորդիչներում լուսապլաստիկ. երևույթի, մետաղների ջերմաստիճան. ապաջերմ. անկանոնության, ինչպես նաև մետաղ-գերհաղորդիչ անցման ժամանակ թուլացման երևույթների ֆիզ. մեխանիզմներ: Աշխ-կել է պինդ մարմինների էլ., լուս. և մեխ. հատկությունների վրա բյուրեղ. ցանցի արատների ազդեցության տեսություն:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ռոբերտ Վարազդատի (ծ. 1929), դաս. ոճի ըմբշամարտիկ: ԽՍՀՄ ս. վ. (1951): ԽՍՀՄ առաջնությունների չեմպիոն և մրցանակակիր: Համամիութ. (1963) և միջազգ. (1969) կարգի մրցավար:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ռուբեն Կաղենի (ծ. 1968), գործարար, բարերար: 1992–2012-ին՝ «Տրոյկա Դիալոգ» (Մոսկվա) ընկ-յան ղեկ. և վերահսկող բաժնետեր, 2013-ից՝ «Վարդանյան, Բրոյթման և գործընկերներ» ընկ-յան համասեփականատեր: 2006–11-ին՝ «Սկոլկովո» (Մոսկվա) կառավարման դպրոցի հիմնադիր-նախագահ: Նախաձեռնել է կայուն զարգացմանն ուղղված մի շարք երկարաժամկետ բարեգործ. ծրագրեր, այդ թվում՝ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամը ՀՀ-ում: 2008-ին նախաձեռնել է «Տաթևի վերածնունդ» նախագիծը, որի շրջանակներում կառուցվել է (2010) «Տաթևի թևեր» ճոպանուղին: Դիլիջանի միջազգ. դպրոցի (2014) հիմնադիր և տնօրենների խորհրդի նախագահ: 2015-ից՝ ***«Ավրորա»*** մարդասիր. նախաձեռնության հիմնադիրներից (Վարդան ***Գրեգորյանի*** և Նուբար ***Աֆեյանի*** հետ):

ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2011), «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» (2011), «Սբ Գրիգոր Լուսավորիչ» (2013) շքանշաններ:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ռուբեն Սարգսի (ծ. 1949), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դ-ր (1985), պրոֆ. (1988): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1994-ից): Սարգիս Հ. ***Վարդանյանի*** որդին և ***Գայանե Վարդանյանի*** եղբայրը: Աշխ-ները վերաբերում են կենտր. նյարդ. և սիրտանոթ. համակարգերի վրա ազդող նյութերի սինթեզին և դրանց կենսբ. ակտիվության ուսումնասիրությանը: Առաջարկել է ցավազրկող անոթիմային դիպիֆենն նոր պատրաստուկները:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ռուզաննա (Ռուզան) Տիգրանի (1897–1957), դերասանուհի: ՀԽՍՀ ժող. արտիստ (1944): Վավիկ ***Վարդանյանի*** քույրը: 1927-ից՝ Երևանի Սունդուկյանի անվ. պետթատրոնի դերասանուհի (Մարգարիտ՝ Շիրվանզադեի «Պատվի համար», Լարիսա՝ Ա. Ն. Օստրովսկու «Անօժիտը», Օֆելյա՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», Ռաննևսկայա՝ Ա. Պ. Չեխովի «Բալենու այգին», Արուսյակ՝ Գ. Բորյանի «Նույն հարկի տակ», ևն):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Սասուն Տիգրանի (ծ. 1942), գրող: 1991–95-ին՝ Վազգենյան հոգևոր դպրանոցի, 1995–98-ին՝ Հառիճի ընծայարանի տեսուչ-տնօրեն: Հեղինակ է «Ակունքներ» (1989), «Սկիզբ» (1991) վիպակների, «Կախարդական մանկություն» (1993), «Հեռու-հեռավոր այն օրերին» (1995) պատմվածքների ժող-ների, «Որոնում» (1995), «Անտակ հորը» (1996) վեպերի, «Արամ Աշխարհակալ» (հ. 1–2, 1997–98) պատմավեպի ևն:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Սարգիս Զատիկի (1914–1961), մարզիկ, մարզիչ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1952), ՀԽՍՀ վ. մ. (1962): Հունա-հռոմ. (1940, 1949, 1952) և ազատ (1947) ոճերի ԽՍՀՄ առաջնությունների չեմպիոն: 1958-ից մարզել է հունա-հռոմ. ըմբշամարտի Հայաստանի հավաքականը, 1957–62-ին՝ Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ: 1963-ից Երևանում անցկացվում է Վ.-ի հիշատակին նվիրված հանրապետ. (1972–90-ին՝ համամիութ.) հունա-հռոմ. ըմբշամարտի ավանդ. մրցաշար:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Սարգիս Համբարձումի (1917–1997), քիմիկոս-օրգանիկ: Քիմիկոս-օրգանիկների հայկ. դպրոցի հիմնադիրներից: Քիմ. գիտ. դ-ր (1956), պրոֆ. (1964): ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1977, թղթ. անդամ՝ 1971-ից): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1974): Ռուբեն և Գայանե ***Վարդանյանների*** հայրը: ՆՕՔԻ տնօրեն (1970–87): ՀՀ ԳԱԱ քիմիաերկրբ. գիտ. բաժանմունքի ակադ. քարտուղար (1994–97): Աշխ-ները վերաբերում են ացետիլենի և տարացիկլային միացությունների քիմիային, օրգանիզմների վրա նոր դեղանյութերի ազդեցությանը: Հայտնաբերել է չհագեցած միացությունների ոչ բնականոն տեղակալման ռեակցիա, որն ընթանում է ացետիլեն-ալենկումուլային վերախմբավորմամբ:

ՀՄՊ 1-ին և 2-րդ աստիճանների, ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի, Կարմիր աստղի շքանշաններ:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Սերգեյ Անդրանիկի (1931–1996), մարզիչ (ծանրամարտ): ՀԽՍՀ (1976), ԽՍՀՄ (1980) վ. մ.: Յուրի *Վարդանյանի* մարզիչը և հորեղբայրը: 1958–96-ին՝ Գյումրու մանկապատանեկան մասնագիտացված մարզադպրոցի ծանրամարտի մարզիչ:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Սերգեյ Գագիկի (ծ. 1952), բանասեր, արձակագիր: 1991–2001-ին՝ ՀՀ Կառ-յանն աոընթեր կրոնի գործերի պետ. խորհրդի փոխնախագահ, 2004-ից՝ «*Հայկ համշենական*» պարբ-ի հիմնադիր-խմբ.: Հեղինակ է «Հայաստանի մայրաքաղաքները» (1995) մենագրության, «Արևածաղիկը» (1989) մանկ. պատմվածքների ժող-ի, «Կրոնափոխ համշենահայերի բարբառը...» (2009), «Արյունոտ սերմեր» (ռուս., 2015) աշխ-ների: Նախաձեռնել և հրատարակել է «Հրեղեն ձին» (1981), «Թագավորի երազները» (2003), «Փրկված հեքիաթներ» (անգլ., 2007, գերմ.՝ 2009) բանահյուս. ժող-ները:

ՀԺՄ (1980), ԹՄՄ «Հայկաշեն Ուզունյան» (1997), ՀՀ ՄՆ և Երևանի քաղաքապետի (2012) ոսկե, ՀՀ ՄՆ «Վիլյամ Սարոյան» (2012), ՀԳՄ «Գրական վաստակի համար» (2015) մեդալներ:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ստելլա Արմենակի (ծ. 1934), բժիշկ-պատմաբան, ուռուցքաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1992), պրոֆ. (1994): Աշխ-ները վերաբերում են միջնադար. հայկ. բժշկ. ու բնագիտ. ձեռագրերին, Հայաստանի բժշկության պատմությանը: Վ. ռուս. թարգմանել և հրատարակել է *Ամիրդովլաթ Ամասիացու* «Ընգիտաց անպէտ» (1990), անգլ.՝ «Ամիրդովլաթ Ամասիացի» (1999, Նյու Յորք) աշխ-ները:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Վաղինակ Եգորի (1923–1990), վնասվածքաբան-օրթոպեդ: Բժշկ. գիտ. դ-ր (1962), պրոֆ. (1966): Աշխ-ները վերաբերում են հոդախտերի (արթրոզ) վիրաբուժ. բուժմանը և հիվանդների ու հաշմանդամների վերականգնման, կոնքազդր. և այլ հոդերի բնածին հոդախախտումների, կլինիկայում վնասվածքաբան. և օրթոպեդ. ժամանակակից բուժման մեթոդների ներդրմանը:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Վասիլ Ավետի (1910–1993), նկարիչ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1966): 1969-ից՝ ԵԴԹ գլխ. նկարիչ: Զևավորել է Մ. Յ. Լերմոնտովի «Դիմակահանդես» (Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոն), Վ. Շեքսպիրի «Անտոնիոս և Կլեոպատրա» (ԵՌԹ), Ե. Օտյանի «Սեր և ծիծաղ» (ԵԴԹ), Բ. Ս. Լասկինի «Սիրո ժամանակը» (Մոսկվայի Վ. Վ. Մայակովսկու անվ. թատրոն) թատեր., Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ» (ԵՕԲԹ) օպեր. և այլ ներկայացումներ:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Վավիկ (Անուշավան) Տիգրանի (1900/01–1967), դերասան, ռեժ., թատեր. գործիչ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1950): Ռուզաննա *Վարդանյանի* եղբայրը: 1920–26-ին՝ Ստավրոպոլի հայկ. թատրոնի հիմնադիր-ղեկ., 1928-ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. պետթատրոնի դերասան (1936-ից՝ նաև ռեժ.), 1954–58-ին՝ ԵՕԲԹ-ի գլխ. ռեժ.: Դերերից են՝ Սուրեն (Շիրվանզադեի «Պատվի համար»), Դերասան (Մ. Գորկու «Հատակում») ևն, բեմադրել է Կ. Մ. Սիմոնովի «Ռուս մարդիկ», «Գևորգ Մարզպետունի» (ըստ Միւրացանի) և այլ պիեսներ, Շ. Գունոյի «Ռոմեո և Ջուլիետ», Տ. Չուխաճյանի «Արշակ Բ» և այլ օպերաներ:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Վարդուհի Ռուբենի (1976–2006), երգչուհի: «Ջոլոտոյ շլյագեր» (Բելառուս, 1999, 1-ին մրց.), «Սլավյանսկի բազար» (Բելառուս, 2000, 2-րդ մրց.), «Դիսքավերի» (Բուլղարիա, 2000, Մեծ մրց.) և այլ միջազգ. մրցույթների դափնեկիր: «Հայաստանի լավագույն երգչուհի» (1999): Ջոռվել է ավտովթարից:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Վարուժան Վռամի (1948–2010), նկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (2003): Ստեղծել է «Ինքնանկար» (1986), «Մուշ» (1986), «Խաչելություն» (1990–2000, շարք), «Ամառ» (2002), «Հեծյալներ» (2006, շարք) և այլ գործեր: Հեղինակ է «Մինասի վերադարձը» (1992) նոթագրության, «Կեղտոտ սենյակ» (1994), բանաստեղծությունների ժող-ի, գրքերի ձևավորումների: ՀԼԿԵՄ (1978), ԹՄՄ «Վարդգես և Ռիտա Պալյաններ» (1987) մրց-ներ:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Վիկտոր Վարդանի (1910–1988), բանաստեղծ-մանկագիր: Հեղինակ է «Հանելուկներ» (1935), «Գարնան ծիլեր» (1950), «Ինչ են երգում ճնճղուկները» (1963), «Լուսաբացից լուսաբաց» (1966), «Արևականչ» (1978), «Ուլիկն ու պուլիկը» (1981) և մանկ. բանաստեղծությունների այլ ժող-ների, նաև պիեսների (զգալի մասը բեմադրվել է):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Վոլոդյա Իշխանի (1951–2004), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (2007): Պրոֆ. (2009): Աշխ-ները վերաբերում են սինթետիկ պոլիմերների ֆիզիկային, ԴՆԹ-ի կառուցվածքի և հատկությունների ուսումնասիրությանը:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Վրեժ Մկրտչի (ծ. 1931), պատմաբան, աղբյուրագետ: Պատմ. գիտ. դ-ր (1994): 1966–81-ին՝ Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրության պատմության բաժնի վարիչ: Գրաբար բնագրով ու առաջաբանով (1985), աշխարհաբարի փոխադրությամբ և ծանոթագրություններով (1999) հրատարակել է *Թովմա Արծրունու* «Պատմություն Արծրունյաց տան» երկը: Հեղինակ է «Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը. 908–1021 թթ.» (1969), «Արծրունիները Հայոց պատմության մեջ» (2002), «Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում» (2005), «Պահլավունիները հայոց պետականության և հոգևոր անաղարտության պահապաններ» (2008), «Գրիգոր Նարեկացին և հայրենի Վասպուրական աշխարհը» (2010) աշխ-ների:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Քնարիկ Գրիգորի (1914–1997), նկարչուհի: ՀՀ վաստ. նկարիչ (1967): 1942–44-ին՝ ԵՏԹ գլխ. նկարիչ: Հեղինակ է «Ծխախոտի սածիլում» (1958), «Հայաստան» (1968), «Ժամանակ» (1970), «Երգ ամառային» (1983) և այլ գեղանկարների:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Օլեգ Մամիկոնի (1946–1997), ճարտ., ճարտ-յան տեսաբան: Պրոֆ. (1994): ՀՃԱ թղթ. անդամ (1994): Հեղինակ է Բյուրեղավանի գլխ. հատակագծի (1973), Երևանում՝ ՀԽՍՀ ԺՏՆՑ ցուցադրման տաղավարի ծալքավոր ծածկի (1980), Մոնրեալի «Կոնկորդ» համալսարանի ցուցադրման տաղավարի (1979), Էջմիածնում՝ թատրոն-էստրադայի (1985) նախագծերի, նաև «Կառուցվածքային ծալքավոր մակերևույթներ» (անգլ., 1979) գրքի:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ֆելիքս Ենոքի (ծ. 1936), հոգեբույժ, մանկավարժ., հաս. գործիչ: Բժշկ. գիտ. դ-ր, պրոֆ.: Աշխ-ները վերաբերում են հոգեկան խանգարումների վրա հոգեղեղաբան. միացությունների ազդեցությանը և նրանց կենսբ. հարաբերակիցների (կոռելատներ) ուսումնասիրմանը, հոգեկան հիվանդությունների պատճառագիտ-յան և ախտածագման, բուժման եղանակների մշակման, առողջապ. կազմակերպիչների պատրաստման խնդիրներին:

ՎԱՐԴԱՆՈՎ, Վարդանիո, կրկեսի արտիստների ընտանիք: **Ալեքսանդր Փարեմուզի Վ.** (1890–1963): Գործել է 1905-ից՝ «Հեծանվազամբյուղ» համարով, 1914-ից՝ միահեծանվորդ, 1919-ին՝ խմբակ. համարի հեղինակ: Խաղընկերուհիներից էին կինը՝ **Անտոնինա Ֆիլիպովնա Վ.** (1910–1961), դուստը՝ **Թամարա Վ.** (ծ. 1935), ավելի ուշ՝ քույրը՝ **Եկատերինա Վ.** (ծ. 1932), և Գ. Վիտկովսկին:

ՎԱՐԴԱՆՈՎ Գենադի Երվանդի (ծ. 1933), ճարտարագետ, հրթիռ. սարքաշինության բնագավառի կազմակերպիչ: ՌԴ վաստ. մեքենաշինարար (1985), պատվ. ավիաշինարար (1993): 1984–2000-ին Դոլգոպրուդնիի գիտաարտադր. ձեռնյունում (Մոսկվայի մարզ) կազմակերպել և ղեկավարել է ԽՍՀՄ ՀՕՊ-ի համալիրների երկիր-օդ, ավիացիոն օդ-օդ դասերի, ՌԾՆ նավ. հրթիռների, առաջին հակահրթիռների արտադր-յունը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1985):

ՎԱՐԴԱՆՈՎ (Վարդանյան) Լևոն Սերգեյի (1907–1943), ճարտ.: Նատալյա *Փարեմուզովայի* ամուսինը: Համահեղինակ է (կնոջ հետ) Երևանի Հանրապետության հրապարակում մինչև 1990-ը կանգնուն Վ. Ի. Լենինի արձանի (1940, քանդ.՝ Ս. Դ. Մերկուրով) պատվանդանի (1937–40, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1970, ապամոնտաժվել է 1996-ին):

ՎԱՐԴԱՆՈՎ (Տեր-Վարդանով) Ռոբերտ Գարեգինի (1922–մ. թ. անհտ), փիլ.: Փիլ. գիտ. դ-ր (1971), պրոֆ. (1972): Հեղինակ է «Ռևիզիոնիզմը և արդիականությունը» (1959), «Սոցիալիզմ. զարգացման աստիճաններ» (ռուս., 1982) և այլ աշխ-ների:

ՎԱՐԴԱՆՈՎ Վալերի Նիկոլայի (ծ. 1949), ռազմ. պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1991), պրոֆ. (1998): ՌԴՆԳԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1993-ից): ՌԴ ՊՆ ռազմ. պատմության ինստ-ի պետի տեղակալ, ՌԴԱ Արևելագետների ընկերակցության Արևելքի ժողդ-ների ռազմ. պատմության հանձնաժողովի փոխնախագահ:

ՎԱՐԴԱՆՈՎ (Վարդանյան) Վարդան Իվանի (1853–1919), ֆիզիոլոգ: Ս. Պետերբուրգի բժշկ. բարձրագույն դպրոցի 1-ին հայ պրոֆ-ը: 1895–1919-ին Ս. Պետերբուրգի ռազմաբժշկ. ակադ-ում եղել է Ի. Պ. Պավլովի ընթերական: Աշխ-ները վերաբերում են օրգանիզմի գազափոխանակության, ջերմակարգավորման և նյարդ. համակարգի ֆիզիոլոգիայի հարցերին: Հեղինակ է «Ֆիզիոլոգիայի» (1906) դասընթացի, «Նոթեր ֆիզիոլոգիայի վերաբերյալ» (1915) աշխ-յան:

ՎԱՐԴԱՊԵՏ, ՀԱԵ կուսակրոն քահանայության գիտ. աստիճան: Վարդապետությունն աստվածաբանության մեջ համապատասխանում է մագիստրոսի, իսկ ծայրագույն վարդապետությունը, աստվածաբանության դոկտորի գիտ. աստիճաններին: Միայն կուսակրոն քին-ն կարող է գիտ. աստիճաններ ստանալ ձեռնադրությամբ, իսկ այն եպս-ները, որոնք ունեն ծայրագույն Վ-ի աստիճան, կարող են ձեռնադրվել Վ-ներ կամ ծայրագույն Վ-ներ: Վ-ի աստիճան են ունեցել

Կոմիտասը, Մխիթար Սեբաստացին և ուր.: Վ.-ին ուղղափառ եկեղեցում համապատասխանում է արքիմանդրիտը:

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ, բարձր տիպի դպրոց միջնադար. Հայաստանում, որի շրջանավարտներին կարող էր շնորհվել ***վարդապետի*** աստիճան և ինքնուրույն գործելու իրավունք: Առաջին Վ. հիմնադրվել է Վաղարշապատում (տես ***Վաղարշապատի դպրոց***): Նշանավոր են եղել Սյունյաց, Արշարունյաց, Սանահինի, Հաղպատի, Տաթևի, Գլաձորի վանքերի և այլ Վ.-ներ:

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ Արշակ Վարդի (1923–1988), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1967), պրոֆ. (1970): Աշխ-ները վերաբերում են հայ ժողղ-ի, ԽՄԿԿ պատմության և ռազմագիտ-յան հարցերին:

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ Բարկեն Սիմոնի (1906–1992), երկրաբան: Երկրբ-հնքբ. գիտ. դ-ր (1962), պրոֆ. (1963): ՀԽՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1961): Աշխ-ները վերաբերում են Հայաստանի մետաղ. և ոչ մետաղ. օգտ. հանածոների հանքավայրերի տեղաբաշխման օրինաչափություններին, հետախուզման ու գնահատման հարցերին:

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ Հովհաննես, Յուհաննա Վարդապետ (այլ հնչմամբ՝ Զոն, 1826–1908), աստվածաբան, մշակույթի գործիչ: 1867–73-ին՝ Բեյրութի սիրիական գիտ. ընկ-յան, 1882–85-ին՝ Գիտ-յունների արլ. ակադ-ի հիմնադիրներից ու փոխնախագահ: 1886-ին՝ Բեյրութի սիրիական քոլեջի հիմնադիրներից (այժմ՝ Ամերիկ. համալսարան):

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ Հրաչիկ Ռաֆայելի (ծ. 1949), կենսաֆիզիկոս-կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դ-ր (1990), պրոֆ. (1992): Աշխ-ները վերաբերում են ԴՆԹ-ի և քրոմատինի կառուցվածքի, բուս. հորմոնների կարգավորման մոլ. մեխանիզմների, մոլ. ու բջջ. կենսբ-յան, բջջ. ու գենային ճարտարագիտ-յան, լուսաքիմիայի և կենսատեխնոլոգիայի հարցերին:

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ Պերճ Արիստակեսի (1914–1988), ներզատաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1970), պրոֆ. (1972): ՀՀ-ում առաջինն է ներդրել սիրտանոթ. համակարգի ուսումնասիրման բալիստա-, վենտորա-, ձայնասրտագրության և այլ մեթոդներ: Զբաղվել է նաև ՀՀ-ում տեղաճարակ. խպիպի տարածվածության և շաքար. դիաբետի բուժման խնդիրներով: ՀՀ ներզատաբանների գիտ. ընկ-յան նախագահ (1968–88):

ՎԱՐԴԱՄ ՍԿԼԵՐՈՍ (հայկ. աղբյուրներում՝ Վարդ Սիկլառոս կամ Սկելառոս, ծ. թ. անհտ–991), X դ-ի բյուզանդացի զորավար: Վ. Ս-ի քույր Մարիան ***Հովհաննես I Չմշկիկի*** կինն էր: 970-ին համոզել է Հովհաննես I Չմշկիկի դեմ ապստամբած ***Վարդաս Փոկասին*** վերջ տալ արյունահեղությանը: 976–79-ին ապստամբել է ***Վասիլ II***-ի դեմ, իրեն հռչակել կայսր: ***Վարդաս Փոկասը*** Հալիս գետի մոտ՝ Պանկալիա կոչվող վայրում, պարտության է մատնել նրան: Վ. Ս. փախել է արաբ խալիֆի մոտ: 987-ին, երբ Վարդաս Փոկասն ապստամբել է Վասիլ II-ի դեմ և իրեն կայսր հռչակել, Վ. Ս. վերադարձել է Բյուզանդիա: Վարդաս Փոկասի մահից հետո գլխավորել է ապստամբությունը, բայց, կայսեր առաջարկությամբ, դադարեցրել է այն: Սակայն կայսեր գործակալները Վ. Ս-ին կուրացրել են Կ. Պոլսի ճանապարհին:

ՎԱՐԴԱՄ ՓՈԿԱՍ (940 – 989), բյուզանդացի զորավար: ***Նիկեփորոս II*** կայսեր եղբորորդին: Եղել է Խաղտիք բանակաթեմի դուքս: 970-ին ապստամբել է ***Հովհաննես I Չմշկիկի*** դեմ, սակայն անսալով ***Վարդաս Սկլերոսի*** կոչին՝ հանձնվել է: Կայսրը Վ. Փ-ին աքսորել է Քիոս: Երբ ***Վասիլ II***-ի դեմ ապստամբել է Վարդաս Սկլերոսը, Վ. Փ. ազատվել է աքսորից, նշանակվել նրա դեմ կռվող զորքերի հրամ.: 987-ին Վ. Փ. ինքն է ապստամբել Վասիլ II-ի դեմ և իրեն հռչակել կայսր: Վ. Փ-ին կայսրի հրամանով թունավորել են Արիդոսի (Դարդանելի նեղուցի ափին) մոտ մարտի ընթացքում:

ՎԱՐԴԱՎԱՌ, Քրիստոսի Պայծառակերպություն, Այլակերպություն, ՀԱԵ 5 տաղավար տոներից: Համաձայն ***Ավետարանի***՝ ***Հիսուս Քրիստոսը*** Պետրոս, Հակոբոս և Հովհաննես առաքյալների աչքի առաջ աղոթելիս պայծառակերպվել է: Ի հիշատակ այս իրադարձության՝ եկեղեցին հաստատել է այս տոնը, որը նշվում է Սբ Զատիկից 14 շաբաթ (98 օր) անց՝ հունիսի 28-ից օգոստ-ի 1-ն ընկած ժամանակահատվածում: Հեթանոս. ժամանակներում Վ.-ի տոնը նվիրվել է հայկ. դիցարանի ջրի, սիրո, պտղաբերության ու գեղեցկության աստվածուհի Աստղիկին. նշել են ժող. ճոխ հանդիսություններով, կազմակերպել ջրախաղեր, զվարճություններ, խնջույքներ: Տես նաև ***Պայծառակերպություն***:

ՎԱՐԴԱՍՏԵՐԵՓՈՒԿ, աստղածաղկազգիների (բարդածաղկավորներ) ընտանիքի միամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 12 տեսակ, ՀՀ-ում՝ 5՝ Արարատյան գոգավորությունում: Գեղազարդիչ է: Սուշկային և Սոսնովսկու տեսակները գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

ՎԱՐԴԱՐ (Vardar), գետ Մակեդոնիայում և Հունաստանում, թափվում է Էգեյան ծովի Տերմաիկոս ծոցը: Երկ.՝ 388 *կմ*, ավազանը՝ 25,4 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 151 *մ*^{3}/*վ*: Վ.-ի ափին է Սակեդոնիայի մայրաքաղաք ***Սկոպիեն***:

ՎԱՐԴԱՔԱՐԻ (ՀՈՌՈՄԻ) ՋՐԱՄԲԱՐ, ՀՀ Շիրակի մարզում՝ Կարկաչուն գետի վրա՝ Վարդաքար գ-ի մոտ՝ 1600 *մ* բարձր-յան վրա: Շահագործման է հանձնվել 1968-ին, վերակառուցվել 1974-ին: Մակերեսը՝ 0,86 *կմ*^{2}, միջին խոր.՝ 15,5 *մ*, ջրատարողությունը՝ 5 մլն *մ*^{3}, օգտ.՝ 4,7 մլն *մ*^{3}, երկ.՝ 594 *մ*, առլգն բարձր.՝ 16,5 *մ*: Ջրթողքը՝ 0,65 *մ*^{3}/*վ*: Աղետային ջրերը (39 *մ*^{3}/*վ*) հեռացվում են խրամատային ջրընդունիչի և արագահոսի միջոցով: Ոռոգում է Լուսակերտ, Սարատակ, Հովտաշեն, Վարդաքար գ-երի հողատարածքները:

ՎԱՐԴԳԵՍԱՎԱՆ, ավան Այրարատ նահանգի Արագածոտն գավ-ում: Ըստ Մովսես Խորենացու՝ հիմնադրել է ***Երվանդ Ա Սակավակյաց*** արքայի (մ. թ. ա. 570–560) քրոջ ամուսին Վարդգես Սանուկը և իր անունով կոչել Վ.: ***Վաղարշ Ա***. Արշակունին (116–144) վերակառուցել, պարսպապատել է Վ. և իր անունով վերանվանել Վաղարշապատի (այժմ՝ Էջմիածին):

ՎԱՐԴԵՆԻ (Rosa), վարդազգիների (վարդածաղիկներ) ընտանիքի բազմամյա բույսերի ցեղ: Հայտնի է մոտ 250–300 տեսակ, ՀՀ-ում՝ 31՝ գրեթե բոլոր մարզերում: Տարբեր չափերի, ձևերի և գույների բուրավետ ծաղիկներով բազմաթիվ սորտեր (շուրջ 25 հզ.) օգտագործում են գեղազարդիչ պարտիզագործության մեջ: Հայաստանը վայրի Վ.-ու բնօրաններից է: «Վարդավառ» հեթանոս. տոնի օրերին միմյանց վրա վարդաջուր են ցողել:

ՎԱՐԴԵՆԻԿՅԻ (Սարգսյան) Հենրիկ Սերյոժայի (ծ. 1952), նկարիչ: Հեղինակ է «Ծաղիկներ, մարդիկ» (1991), «Աղջիկը թռթռակներով» (1993), «Հայաստան», «Երկխոսություն», «Աստղիկը» (բոլորը՝ 1994), «Երաժշտություն» (2003) և այլ գործերի:

ՎԱՐԴԵՆԻՍ, գետ ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Սևանա լճի ավազանում: Սկիզբ է առնում Վարդենիսի լ-շղթայի կենտր. մասի հս. լանջերից՝ 3215 *մ* բարձր-ից: Երկ.՝ 28 *կմ*, ավազանը՝ 116 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1,87 *մ*^{3}/*վ*: Գետահովիտը վերին և միջին հոսանքներում V-աձև է, ստորինում լայնանալով՝ դուրս է գալիս մերձլճային հարթավայր և Վարդենիկ գ-ից հս թափվում Սևանա լիճը: Մնումը ձնաանձրևային է, վարարումը՝ գարնանը: Սելավատար է: Ձմռանը սառցակալում է:

ՎԱՐԴԵՆԻՍ, ***Վարդենիսի լեռնաշղթայի*** ամենաբարձր լ-գագաթը (3522 *մ*)՝ Գեղարքունիքի մարզի հվ-ում՝ Վայոց ձորի մարզի հետ սահմանին: Հրաբխ. կոն է՝ կազմված նեոգենի և անթրոպոգենի լիպարիտներից, բազալտներից, անդեզիտաբազալտներից: Լանջերը ծածկված են լ-մարգագետն. բուսականությամբ:

ՎԱՐԴԵՆԻՍ (հնում՝ Վասակաշեն, XVII դ-ից՝ Ոսկեշեն, XIX դ.–1969-ը՝ Բասարգեչար), ք. (1995-ից) Գեղարքունիքի մարզում՝ Երևանից 168 *կմ* հս՝ Մասրիկի դաշտում: Բն.՝ 12,8 հզ. (2012): Տնտ-յան առաջատար ճյուղը ոսկու հանքանյութի արդյունահանությունն ու սննդի արդ-յունն է: Գործում են Համազասպ ***Համբարձումյանի*** տուն-թանգարանը, Վիկտոր Համբարձումյանի անվ. բժշկ. և Բաղեյան քոլեջները: Շրջակայքում կան մ. թ. ա. III–I հզ-ամյակների դամբարաններ, մ. թ. XV–XVIII դդ-ի խաչքարեր: XIX դ-ում կառուցվել է Սբ Աստվածածին եկեղեցին:

ՎԱՐԴԵՆԻՍԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Գեղարքունիքի ու Վայոց ձորի մարզերի միջև: Կամարաձև ձգվում է արմ-ից արլ.՝ Գնդասար լ-զանգվածից մինչև Ծարասար: Ջրբաժան է Սևանա լճի ու Արփայի ավազանների միջև: Երկ.՝ 60 *կմ*, առլգն բարձր.՝ 3522 *մ* (***Վարդենիս***): Լանդշաֆտը լ-տափաստանային է, բարձրլեռն. մասում՝ լ-մարգագետն.: Գետահովիտներում տեղ-տեղ կան անտառապուրակներ: Կենտր. մասով է անցնում Որոտան–Արփա–Սևան թունելը: Վ. լ-ի արմ-ում են Վարդենյաց լ-անցքը և կարավանատուն (XIV դ.):

ՎԱՐԴԵՆՅԱՑ ԼԵՌՆԱՆՑՔ, Սուլեմայի լեռնանցք, Հայոց ձորի լեռնանցք, Վարդենիսի լ-շղթայի արմ. մասում՝ 2410 *մ* բարձր-յան վրա՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում: Վ. լ. Սևանի ավազանն Արգիճիի հովտով կապում է Վայքին: Վ. լ-ով է անցնում Մարտունի–Եղեգնաձոր ավտոխճուղին:

ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ Լևոն Գարեգինի (ծ. 1930), անասնաբույծ: Գղտ. գիտ. դ-ր (1977), պրոֆ. (1985): Աշխ-ները վերաբերում են կաթի փոխարինիչների և հատուկ համակցված կերերի կիրառությամբ տավարի մատղաշի աճեցման արդյունավետ եղանակների մշակմանը:

ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ Պողոս Հովհաննեսի (ծ. 1953), կենսաֆիզիկոս: Կենսբ. գիտ. դ-ր (1991), պրոֆ. (1994): Աշխ-ները վերաբերում են կենսաբանորեն ակտիվ նյութերի ազդեցությամբ գենոմում տեղի ունեցող փոփոխություններին, բուս. քրոմատինում և նրա բաղադրամասերում սաղմնագոյացման վաղ փուլերում կատարվող կառուցվածք. տեղաշարժերին:

ՀՀ կենսաֆիզիկոսների ընկ–յան փոխնախագահ (1991–ից):

ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ Վահագն Վաղինակի (1966–1994), ազատամարտիկ, գրոհ. ջոկատի հրամ.: Արցախի հերոս (2006), ՀՀ բանակի ավագ լեյտ. (1993): Հերոսի կոչման արժանացել է Կարմիրավանի մոտ մարտերում ցուցաբերած անձնազոհության համար:

ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ Վարդուհի Կարապետի (1928–2015), դերասանուհի: ՀԽՍՀ (1965), ԽՍՀՄ (1988) ժող. արտիստ: Գևորգ *Աբաջյանի* կինը: 1946–ին հայրենադարձել է: 1947–ից՝ Լենինականի դրամատիկ., 1958–ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնների դերասանուհի (Հուդիթ՝ Կ. Գուցկովի «Ուրիել Ակոստա», 1958, Էլիզաբեթ՝ Ա. Միլլերի «Սալեմի վհուկները», Ջոնի՝ Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է», երկուսն էլ՝ 1965, Անուշ՝ Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար», 1963, Յոթծովիմեբան՝ «Հացավան»՝ ըստ Ն. Զարյանի, 1980, Շնորհիկ՝ Ա. Վարդանյանի «Ախացելը», 2000, ևն): Մասնակցել է ռադիո- և հեռուստաբեմադրությունների (Ե. Օտյանի «Միջնորդ տեր պապան», «Թաղականին կնիկը» ևն): Նկարահանվել է կինոյում («Պատվի համար», 1956, «Կարինե», 1967, ևն, Հայֆիլմ): Հեղինակ է «Իմ կյանքի հեքիաթը» (2003) գրքի:

ՀՀ Պետ. մրց. (1979), «Սր Մեսրոպ Մաշտոց» շքանշան (2013), «Մովսես Խորենացի» մեդալ (1995):

ՎԱՐԴԻԿՅԱՆ Սեդա Ավագի (1920–2001), կենդանաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1996): Հայտնաբերել է 321 տեսակի երկրաչափ թիթեռներ՝ 12–ը՝ նոր, և 73–ը՝ գղտ. բույսերի վնասատուներ: Հեղինակ է «Հայկական ՍՍՀ վնասակար երկրաչափ թիթեռների որոշիչ» (1980) գրքի:

ՎԱՐԴԿԱԿԱՉ (Tulipa), **վարդակակաչ**, շուշանազգիների ընտանիքի սոխուկավոր բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 140 տեսակ, ՀՀ–ում՝ 7 (որոնցից խճճված և Սոսնովսկու Վ–ները Հայաստանի բնաշխարհիկներ են), գրանցված են ՀՀ Կարմիր գրքում: Վ–ի տարբեր սորտեր (մի քանի հզ.) օգտագործվում են գեղազարդիչ պարտիզագործության մեջ:

ՎԱՐԴՅԱԿ, բացված ծաղկի (օր.՝ վարդի, որտեղից էլ՝ անվանումը) տեսքով ոճավորված զարդամոտիվ, որը հնուց կիրառվում է *զարդարվեպում*:

ՎԱՐԴՈ, **Վարդով**, գվով Արմ. Հայաստանում՝ Բիթլիսի վիլայեթում (այժմ՝ Մուշի իլում): Համապատասխանում է Տուրուբերանի *Արշարունիք* գվո–ի արլ. մասին: Հս–ից սահմանակից է (Սերմանց կամ Բինգյոլ և Խամլբերդ լ–ներով) Խնուսին, արլ–ից՝ Բուլանըխին, հվ–ից (Հավատամք լ–գագաթով)՝ Մշո դաշտին, արմ–ից՝ Ճապաղջրի Գինեկ (Գյոյնուք) գվոկ–ին: Վ–ի տարածքով հոսում է Բազկան կամ Բյուրակն գետը (ստորին հոսանքում՝ Ջարբուհար): Վ. 1555–ից Թուրքիայի կազմում է: XIX դ–ի 2–րդ կեսից Վ. եղել է Էրզրումի, ապա՝ Բիթլիսի վիլայեթի Մուշի սանջակի կազմում: XX դ–ի սկզբին Վ. ունեցել է մոտ 3 հզ. հայ բնակիչ, որոնք զոհվել են 1915–ին՝ Մեծ եղեռնի ժամանակ:

ՎԱՐԴՈՎՅԱՆ Հակոբ Բաղդասարի (1840–1898), թատեր. գործիչ, ռեժ., դերասան: Թուրք. թատրոնի հիմնադիրը: 1861–ից՝ Կ. Պոլսի Արլ. թատրոնի դերասան, 1868–ից՝ Վարդովյան թատրոնի հիմնադիր–ղեկ–ը: Բեմադրել է հայ. և թուրք. ներկայացումներ: Դերերից են՝ Ռոդեն (Է. Սյուի «Թափառական հրեա»), Արտաշես (Պ. Դուրյանի «Արտաշես աշխարհակալ»), բեմադրություններից՝ Մ. Պեշիկթաշլյանի «Վահան Մամիկոնյան», Թ. Թերզյանի «Սանդուխտ կույս», Վ. Շեքսպիրի «Մակբեթ», Վ. Հյուգոյի «Անջելո» ևն:

ՎԱՐԴՈՎՅԱՆ ԹԱՏՐՈՆ, հայկ. պրոֆեսիոնալ թատերախումբ, թուրք. աղբյուրներում՝ «Օսմանյան թատրոն» և «Կետիկ փաշայի թատրոն»: Հիմնադրել է Հակոբ *Վարդովյանը* 1868–ին Կ. Պոլսում, «*Արևելյան թատրոն*»–ի դերասաններով: 1869–ին ստացել է 10 տարվա պետ. մենաշնորհ՝ ներկայացումները հայ. և թուրք. բեմադրելու պայմանով: Բեմադրել են Մ. Պեշիկթաշլյանի, Ս. Հեքիմյանի, Խ. Գալֆայանի, Պ. Դուրյանի և ուր. ողբերգությունները, նաև արևմտաեվրոպացի դասականների պիեսներից (Վ. Հյուգոյի «Էռնանի», Ֆ. Շիլլերի «Ավազակներ», Մոլիերի «Ակամա բժիշկ», ևն), Տ. Չուխաճյանի, Ժ. Օֆենբախի, Շ. Լեկոքի և ուր. օպերետները: Թատերախմբում գործել են Պ. Ադամյանը, Ա. Հրաչյան, Մարի Նվարդը, Սիրանույշը, Մ. Մնակյանը, Ս. Պենկլյանը և ուր.:

ՎԱՐԴԱՊԱՐՈՆՅԱՆ Խաչատուր Անուշավանի (1924–2004), նկարիչ: ՀՀ վաստ. նկարիչ (1977): Ստեղծագործել է հաստոց. և մոնումենտալ ձևավորման բնագավառում («Վերածնունդ», 1979, որմնանկար, Լենինական, «Հայ աղջիկներ», 1997, խճանկար, «Գյումրի: Տարվա եղանակները», 2000, բնանկար, «Մարշալ Բաղրամյան», 2000, դիմանկար, ևն):

ՎԱՐԴԱՊԱՐՈՆՈՎ Ռաֆայել Աբսենտիոսի (ծ. 1932), ֆիզիոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (1983): Բժշկ. ծառայության գնդ.: Մշակել է գերբեռնվածության պայմաններում մարդու ֆունկցիոնալ վիճակի գնահատման նոր մեթոդներ, ուսումնասիրել օդաչուի օրգանիզմի վրա երկարատև արագացման գերբեռնվածության ազդեցությունը: ՌԴ «Մարտական ծառայությունների համար» մեդալ:

ՎԱՐԴՈՒՀԻ (Նամուրազյան–Չիլինգարյան Աննա, 1862–1945), դերասանուհի: 1879–ից խաղացել է Թիֆլիսի հայկ. թատերախմբերում: Աչքի է ընկել բացառիկ ստուգապատում խաղով, հին Թիֆլիսի բարքերի կնիքը կրող կերպարների նուրբ անձնավորումներով (Շուշան, Խամփերի, Խախո՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», «Խաթաբալա», «Քանդած օջախ»), այլ դերերից են՝ Կուկուշկինա (Ա. Ն. Օստրովսկու «Եկամտաբեր պաշտոն»), Խանում (Ցագարելու «Խանումա»):

ՎԱՐԴՈՒՄՅԱՆ Գառնիկ Բարսեղի (1920–1992), փոխգնդ. (1963): ԽՄ հերոս (1945): 1941–ի օգոստ–ին զորակոչվել է բանակ: Հերոսի կոչման արժանացել է Գերմանիայի Գուրեն ք–ի գրավման ժամանակ (1945–ի փետր. 26–մարտի 3) ցուցաբերած խիզախության համար:

ՎԱՐԴՈՒՄՅԱՆ Դերենիկ Սուրենի (1923–2005), պատմաբան, ազգագրագետ: Պատմ. գիտ. թեկնածու (1953), պրոֆ. (2002): Աշխ–ները վերաբերում են խորհրդ. շրջանում հայոց կենսակերպում տեղի ունեցած փոփոխություններին, ավանդույթային տնտեսամշակութ. տիպերին ու պատմաազգագր. մարզերին:

ՎԱՐԴՈՒՄՅԱՆ Հովիկ Սարիբեկի (ծ. 1940), արձակագիր: Մասնակցել է Ղարաբաղյան ազատագր. պատերազմին (1990–94): Հեղինակ է «Այդպիսի պատմություն» (1983), «Լաբիրինթոս. պատմվածքներ» (2003), «Բաժանարար գիծ» (2011) պատմվածքների ժող–ների, «Արծիվներն այդպես են մեռնում» (1997), «Անահիտ աստվածուհու վերադարձը» (2002) վիպակների: «Կանթեղ» (2010), «Փոքր Մհերի վերադարձը» (2014), «Ուխտյալները» (2015) վեպերի, «Զրույց Հրանտ Մաթևոսյանի հետ» (2003) հրապարակախոս. երկի, Վ–ի գործերից թարգմանվել են ռուս., ուկր., պարսկ., անգլ., ֆրանս. և այլ լեզուներով: ՀԳՄ Մ. Նալբանդյանի անվ. մրց. (2004), ՀՀ ՊՆ «Վազգեն Սարգսյան» (2004), «Մարշալ Բաղրամյան» (2011), ՀԳՄ «Գրական վաստակի համար» (2011), ԼՂՀ «Մայրական երախտագիտության» մեդալներ, ՀՀ ՄՆ «Գրիգոր Նարեկացի» (2014) հուշամեդալ:

ՎԱՐԴՈՒՆԻ Լևոն Մուշեղի (1898–1975), մանկավարժ: ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1965): 1945–52–ին՝ ՀԽՍՀ դպրոցների ԳՀԻ, 1954–55–ին՝ Օտար լեզուների, 1955–62–ին՝ Հեռակա մանկավարժ. ինստների տնօրեն:

ՎԱՐԵԼԱՀՈՂ, մշակաբույսերի ցանքի համար օգտագործվող հողհանդակ: Վ–եր են նաև ցանքաշրջանառությունների դաշտերը, ցելերը, ինչպես նաև բանջարանոցները, ցանքի համար նոր իրացվող հողերը ևն: Վ–ի տարածությունն աշխարհում կազմել է 4,8 մլրդ *հա* կամ ընդհ. հողատարածքի 37 %–ը, ՀՀ–ում՝ 448,5 հզ. *հա*:

ՎԱՐԵՆԻՈՒՍ (Varenius) Բեռնարդուս (իսկական անունը՝ Բեռնհարդ Վարեն, Varen, 1622–1650), հոլանդացի աշխարհագետ: «Համընդհանուր աշխարհագրություն» (1650) աշխ–յան մեջ առաջին անգամ առանձնացրել է աշխարհագրությունը Երկրի մասին գիտ–յուններից:

ՎԱՐԵՍ (Vares) Յոհաննես (1890–1946), էստոնացի բանաստեղծ, հաս. գործիչ: 1940–46–ին՝ Էստ. ԽՍՀ ԳԽ նախագահ: Հեղինակ է «Հոսանքին հակառակ» (1946), «Քայլ առ քայլ դեպի հաղթանակ» (1946) բանաստեղծությունների ժող–ների: Ինքնասպան է եղել:

ՎԱՐԹԵՆԻՍՅԱՆ Շաքե (ծ. 1931), երգչուհի (սոպրանո): Երգել է Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերա», ապա՝ Միլանի «Լա Սկալա» օպեր. թատրոններում (Լեդի Մակբեթ՝ Ջ. Վերդիի «Մակբեթ», ևն): Սպոլետայի (Իտալիա, 1958) միջազգ. փառատոնի մրց., Ջ. Վերդիի անվ. ոսկե շքանշան (1963):

ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ Գրիգոր Սիմոնի (1905–1960), դիրիժոր: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1945): 1937–ից՝ ԵՕՔԹ–ի դիրիժոր, 1951–ից՝ ԵԵԿԹ–ի գլխ. դիրիժոր: Ղեկավարել է Տ. Չուխաճյանի «Արշակ Բ», Ռ. Լեոնկավալլոյի «Պայացներ», Ժ. Բիզեի «Կարմենն» օպեր., Վ. Կանդելակիի «Ծղնեթցի Մայան», «Կապկազ թամաշա» (ըստ Ե. Չարենցի) թատեր. ներկայացումները: Վրաստանի թատեր. ընկ–յան և կոմպոզիտորների միության հատուկ մրց. (1958):

ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ Մարատ Ռուբենի (1935–1987), կինոօպերատոր, կինոռեժ.: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1983): 1963–68–ին՝ Հայֆիլմի օպերատոր, 1969–87–ին՝ «Երևան» ստուդիայի ռեժ.: Ռեժ. աշխ–ներից են՝ «Բաժբեռուկ Մելիքյան» (1968), «Հրաչյա Ներսիսյան» (1972), «Գոհար Գասպարյան», «Մինաս Ավետիսյան» (երկուսն էլ՝ 1977), «Էլիբեկյաններ» (1980) և այլ վավերագր., «Հե՛յ, ո՞վ կա այդտեղ» (1979), «Անուշ» (1983) և այլ հեռուստա-

տես. գեղ. ֆիլմերը: Այսրկովկաս. և ուկր. կփ-երի գլխ. (1968), ՀԼԿԵՄ (1971) մրց-ներ:

ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ Ներսես Ստեփանի (աշխարհիկ անունը՝ Պողոս), **Ներսես Բ Վարժապետյան Իսթանպուլցի** (1837–1884), եկեղեց., հաս-քաղ. գործիչ: Կ. Պոլսի հայոց պատրիարք՝ 1874–84-ին: 1858-ին ձեռնադրվել է վրդ., 1862-ին՝ եպս.: 1872-ին եղել է Նիկոմեդիայի հոգևոր առաջնորդը: Մեծ աշխ. է կատարել Սան Ստեֆանոյի պայմանագրում (1878) արևմտահայերի մասին հատուկ հոդված (16-րդ) մտցնելու համար: Բեռլինի խորհրդաժողովում (1878) Հայկ. հարցի քննարկումը նախապատրաստելու նպատակով Մկրտիչ Խրիմյանի (*Մկրտիչ Ա Վանեցի*) գլխավորությամբ Եվրոպա է ուղարկել հայկ. ազգ. պատվիրակություն: 1884-ին Վ. ընտրվել է Ամենայն հայոց կաթողիկոս, սակայն առողջ. վիճակի պատճառով հրաժարվել է:

«ՎԱՐԺԱՐԱՆ», մանկավարժ. ամսագիր (1882–84, Թիֆլիս): Խմբ.՝ Նիկողայոս Խոսրովյան:

ՎԱՐԻԱՑԻՈՆ ՀԱՇԻՎ, մաթ-ի բաժին, որը նվիրված է 1 կամ մի քանի ֆունկցիաների ընտրությունից կախված փոփոխ. մեծությունների (այդպիսի մեծություններն անվանում են ֆունկցիոնալներ) մեծագույն և փոքրագույն արժեքները գտնելուն: Վ. հ-ի խնդիրներից են, օր., հավասարապատկածային խնդիրները:

ՎԱՐԻԱՑԻՈՆ ՇԱՐՔ, դիտարկվող մեծության արժեքների աճման կարգով տեղադրված հաջորդականություն: Օր.՝ 1, –3, 0, 5, 3, 4 արժեքների Վ. շ. կունենա –3, 0, 1, 3, 4, 5 տեսքը:

ՎԱՐԻԱՑԻՈՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ, մաթ. վիճակագրության բաժին. ուսումնասիրում է օբյեկտների համախմբությունների հատկությունները, որոնցում ուսումնասիրվող հայտանիշի ցուցանիշը փոփոխվում է օբյեկտից օբյեկտ:

ՎԱՐԻԵՏԵ (ֆրանս.՝ variété – բազմազանություն), թատեր. ներկայացման տեսակ, որտեղ զուգակցվում են թատեր., երաժշտ., կրկես. արվ-ների ժանրերից: Վ-ի առաջին թատրոնը բացվել է 1720-ին Փարիզում: Բնորոշ են կատակերգ. տարրերը, հեգնանքը, պարոդիան:

ՎԱՐԻՆՅՈՆ (Varignon) Պիեռ (1654–1722), ֆրանսիացի մեխանիկոս և մաթեմատիկոս: Աշխ-ները վերաբերում են տես. մեխանիկային, երկրչփ-յանը, հիդրոմեխանիկային: Համակարգված շարադրել է ուժերի, ուժերի մոմենտների գումարման և հանման ուսմունքը (*Վարինիոնի թեորեմ*, 1687):

ՎԱՐԻՆՅՈՆԻ ԹԵՈՐԵՄ, համազոր ուժերի համակարգի մոմենտը կամայական կետի (կամ առանցքի) նկատմամբ հավասար է նույն կետի (առանցքի) նկատմամբ այդ համակարգի ուժերի մոմենտների գումարին:

ՎԱՐԻՈՄԵՏՐ (< լատ. vario – փոփոխել և ...*մետր*), 1. **ռադիոտեխնիկայում,** ինդուկտիվության սահուն փոփոխման սարք, օր.՝ տատանող. կոնտուրն անհրաժեշտ հաճախությամբ համալարելու համար: 2. **Երկրաֆիզիկայում,** սարք, որը ծառայում է որևէ երկրաֆիզ. մեծության, օր.՝ ժամանակի ընթացքում Երկրի մագնիս. դաշտի լարվածության (մագնիս. Վ.), Երկրի մակերևույթին մոտ հորիզոն. ուղղությամբ ծանրության ուժի դաշտի (գրավիտացիոն Վ.) փոփոխությունը որոշելու համար: Կիրառվում է օգտ. հանածոների հետախուզության ժամանակ: 3. **Ավիացիայում**, ինքնաթիռավարման սարք՝ թռիչքի բարձր-յան փոփոխման արագությունը որոշելու համար:

ՎԱՐԿ, փողի կամ ապրանքների տրամադրում պարտքով (օգտագործում որոշակի ժամկետով, վերադարձման պայմանով) և, որպես կարգ, տոկոսի վճարումով: Վ. **հիպոթեկային**, դրամ. փոխատվության տրամադրում՝ անշարժ գույքի (հողամասերի և քաղաք. շինությունների) գրավի դիմաց: Վ. **միջազգային**, Վ-ի տեսակ, որը պետությունները, միջազգ. բանկերը, ֆին. կազմ-յունները, մասնավոր բանկերն ու ֆիրմաները տրամադրում են միջազգ. տնտ. համագործակցության շրջանակներում:

ՎԱՐԿԱՆԻՇ, **ռեյտինգ** (անգլ.՝ rating), սպորտում, շախմատիստի (թենիսիստի, շաշիստի ևն) մարզ. ձեռքբերումների գնահատման անհատ. թվային ցուցանիշ դասակարգման աղյուսակում (Վ.-թերթ), որն աշխարհի լավագույն մարզիկների համար ամեն տարի կազմում է համապատասխան միջազգ. մարզ. կազմ-յունը:

ՎԱՐԿՈՆՅԻ (Várkonyi) Զոլտան (1912–1979), հունգար դերասան, ռեժ.: ՀԺՀ ժող. արտիստ (1962): 1962-ից՝ «Վիգսինհազ» (Բուդապեշտ) թատրոնի ղեկ.: Նկարահանել է «Զայրույթի օրը» (1953), «Աղեսյուն» (1958), «Հունգար նաբորը» (1967), «Սև ալմաստներ» (1979) և այլ ֆիլմեր: Լ. Կոշուտի անվ. մրց. (1953, 1956):

ՎԱՐՁԱԿ (պիլ.՝ varzak), հայ հին և միջնադար. պալատ. կամ հրապարակ. թատրոնի կատակերգակ դերասանուհի, պարուհի, երգչուհի: Հանդես է եկել կիսամերկ (շղարշազգեստ), դեմքն ու մարմինն օծել դեղերով, գունազարդվել է: Հավանաբար եղել է մսկատակ, սկզբնապես՝ Անահիտի տաճարի սպասավոր և մասնակցել է պաշտամունք. ծիսակատարություններին:

ՎԱՐՁԱՆՔ, **տուայր,** 1. հին և միջնադար. Հայաստանում՝ նվեր, օժիտ, որը փեսան կամ նրա հարազատները տալիս էին հարսնացուի հարազատներին: Վ.-ով աղջիկը հոր իշխանությունից անցնում էր ամուսնու ընտանիք: 2. Դույք, դրամ, որն ամուսնու մահվանից հետո մնում է կնոջը:

ՎԱՐՁԿԱՆՆԵՐ, օրավարձով ապրող չքավոր խավ միջնադար. Հայաստանում: Առաջացել է զարգացած ավատատիրության ժամանակաշրջանում՝ գյուղացիների սնանկացման և հողազրկման հետևանքով: Կատարել են տարբեր բնույթի ոչ մշտ. աշխ-ներ և դրանց դիմաց ստացել օրավարձ: Կենտրոնացել են հիմնականում քաղաքներում: Վ. են կոչվել նաև բերքի 1/5 կամ 1/10 մասն իրենց պահելու իրավունքով հողակտոր վարձակալած տնանկ գյուղացիները:

ՎԱՐՁՈՒ ԲԱՆԱԿՆԵՐ, կազմվել են պրոֆեսիոնալ զինվորներից (վարձկանների), որոնց վարձել են պետությունները, քաղաքները ևն: Վ. բ. գոյություն են ունեցել Հին Եգիպտոսում, Պարսկաստանում և այլուր (մինչև XV–XVIII դդ.): Ներկայում ազգ. ՋՈՒ-ի համալրումը մի շարք պետություններում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա ևն) կատարվում է քաղաքացիներին վարձելու (հավաքագրելու) միջոցով, որոնց հետ կնքվում են պայմանագրեր՝ տարբեր ժամկետներով:

«ՎԱՐՉԱ», մշակութաբան. կիսամյա հանդես (2010–ից, Երևան): Հայկ. ճարտ-յունն ուսումնասիրող հիմնադրամի հրտ-յուն: Հիմնադիր-խմբ.՝ Սամվել Կարապետյան:

ՎԱՐՄԻՆԳ (Warming) Յոհաննես Էուգենիուս (1841–1924), դանիացի բուսաբան, բույսերի էկոլոգ. աշխարհագրության և կենսաձևերի ուսմունքի հիմնադիրներից:

ՎԱՐՄՈՒՍ (Varmus) Հարոլդ (ծ. 1939), ամերիկացի մոլ. կենսաբան, բժիշկ-վիրուսաբան: Աշխ-ները վերաբերում են ուռուցքածին վիրուսների մոլ. կենսբ-յանը և բջիջների հետ նրանց փոխազդեցությանը: Բացահայտել է (Ջ. Մ. *Բիշոպի* և ֆրանսիացի գիտնական Դ. Ստեելենի հետ) ռետրովիրուս. ուռուցքածինների բջջ. բնույթը: Նոբելյան մրց. (1989, Ջ. Մ. Բիշոպի հետ):

ՎԱՐՅԱՆ Ռազմիկ Սիմոնի (1927–2003), անասնաբույծ-ընտրասերումնաբան: Գղտ. գիտ. դ-ր (1979), պրոֆ. (1989): ՀԳԳԱ թղթ. անդամ: Աշխ-ները վերաբերում են գղտ. կենդանիների բուծման, կերակրման, խոզերի ցեղերի կատարելագործման, մաքրացեղ բուծման ու տրամախաչման ժամանակ մթերատվության վրա գենոտիպի և արտաքին միջավայրի ազդեցության խնդիրներին: Բուծել է խոզերի Հայկ. մսատու նոր ցեղ:

ՎԱՐՇԱՄՈՎ Հովհաննես Սարգսի (Վարշամով Իվան Սերգեևիչ, 1827/28–1907), ռուս. բանակի գեն-մայոր (1881): 1877–78-ի ռուս-թուրք. պատերազմում ցուցաբերած արիության համար Վ-ին ցարի անունից շնորհվել է ոսկե սուր՝ «Քաջության համար» մակագրությամբ:

ՎԱՐՇԱՄՈՎ Ռոմ Ռուբենի (1927–1999), կիրառ. մաթ-ի բնագավառի գիտնական: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1966), պրոֆ. (1969): ՀՀ ԳԱԱ ակադ. (1990, թղթ. անդամ՝ 1977-ից): Դրել է գծային կոդավորման տեսության հիմքը, որոշել համաչափ սխալներ ուղղող կոդերի գոյության հնարավորությունները, որոնք հայտնի են «Վ.-Հիլբերտի սահման» անունով: Հեղինակ է վերջավոր դաշտերի վրա բազմանդամների բերման տեսության: Լուծել է վերջավոր դաշտերի վրա ցանկացած աստիճանի չբերվող բազմանդամների կառուցման խնդիրը, առաջադրել օբյեկտիվ բնութագրերի կտրուկ փոփոխություններին հարմարվող, տիեզ. կապուղիներով տվյալների հաղորդման համակարգերի մշակման նոր սկզբունքներ:

ՎԱՐՇԱՎԱ (Warszawa), Լեհաստանի մայրաքաղաքը, Վարշավյան վոյեվոդության վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,7 մլն (արվարձաններով՝ 2,26 մլն, 2010): Եվրոպ. նշանակության տրանսպորտ. հանգույց է, նվինգստ՝ Վիսլայի ափին: Ունի օդանավակայան և մետրոպոլիտեն: Կան մեքենաշին. և մետաղամշակման, սննդի, քիմիահեղուկգործ., կարի, տպագր. արդ-յան և այլ ձեռն-ներ: Գործում են մեծ թվով թատրոններ, թանգարաններ, բուհեր, Լեհաստանի ԳԱԱ-ն: Հին բ-ում պահպանվել են բերդապարիսպներ (XIV–XV դդ.), XV–XVIII դդ-ի տներ, գոթ. ոճի կոստյոլ (XVդ.), Նոր բ-ում՝ գոթ. ոճի (XV դ.) և XVI–XVII դդ-ի կոստյոլներ, մենաստաններ: Վ-ի պատմ. կենտրոնը Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՎԱՐՇԱՎԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, 1. **1768**, կնքել են Ռուսաստանն ու Ռեչ Պոսպոլիտան: Նախատեսում էր ոչ կաթոլիկների և կաթոլիկների իրավահավասարություն Ռեչ Պոսպոլիտայում՝ ամրապնդելով ռուս. ցարիզմի քաղ. ազդեցությունը Լեհաստանում: 2. **1955** (բարեկամության,

համագործակցության և փոխօգնության վերաբերյալ), մայիսի 14-ին Վարշավայում ստորագրել են Ալբանիան (1962-ից չի մասնակցել Կազմ-յան գործունեությանը, իսկ 1968-ի սեպտ-ին դուրս է եկել կազմ-յունից), Բուլղարիան, Հունգարիան, ԳԴեմՀ-ն (1990-ին, ԳԴՀ-ին միավորվելուց հետո դուրս է եկել Կազմ-յունից), Լեհաստանը, Ռումինիան, ԽՍՀՄ-ը և Չեխոսլովակիան: Վ. պ-ի կնքումը *Հյուսիատլանտյան դաշինքի* (1949) ստեղծման և նրանում Արմ. Գերմանիայի ներգրավման հակաքայլն էր: Պայմանագրի մասնակից պետությունների հիմն. նպատակը Եվրոպայում սեփ. անվտանգության ու խաղաղության պահպանումն էր: Կազմ-յան բարձրագույն մարմինը Քաղ. խորհրդատվ. կոմիտեն էր: 1985-ի ապրիլի 26-ին Վ. պ. երկարաձգվել է 20 տարով, 1990-ի փետր-ին ռազմ. մարմինները կազմալուծվել են: 1991-ի հուլիսի 1-ին Պրահայում Բուլղարիան, Լեհաստանը, Ռումինիան, ԽՍՀՄ-ը և Չեխոսլովակիան ստորագրել են հոչակագիր՝ Վ. պ-ի գործունեության դադարեցման վերաբերյալ:

ՎԱՐՈԼԻՈ (Varolio) Կոստանցո (1543–1575), Վերածննդի ժամանակաշրջանի իտալացի անատոմ: Աշխ-ները վերաբերում են գլխուղեղի և գանգուղեղ. նյարդերի ձևաբանությանը: Վ-ի անունով է կոչվել երկարավուն ուղեղի վարոլյան կամուրջը:

ՎԱՐՈՍ Պուբլիոս Քվինտիլիոս (Publius Quintilius Varus, մ. թ. ա. մոտ 53–մ. թ. 9), հռոմեացի քաղ. գործիչ և զորավար: Մ. թ. ա. 13-ից՝ կոնսուլ, մ. թ. ա. 7–6-ին՝ լեգատ Ասորիքում, մ. թ. 5-ից՝ Գերմանիա պրովինցիայի կուսակալ:

ՎԱՐՈՑ, զենքի հնագույն տեսակ, մի ծայրը գամերով պատած մահակ կամ փայտե կոթի վրա հագցված ելուստներով գունդ: Միջնադար. Հայաստանում Վ-ով զինվել են հիմնականում հետևակ. որոշ զորախմբեր (վարոցավորք):

ՎԱՐՉԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ, վարչաիրավ. վեճերի լուծման հատուկ կարգ, որի դեպքում դատ. և այլ հատուկ պետ. մարմինները քննում են պետ. կառավարման մարմինների գործողությունների հետ կապված բողոքներն ու կայացնում համապատասխան որոշումներ:

ՎԱՐՉԱԿԱՆ ՋԱՆՑԱՆՔ, զանցանք, պետ. կամ հաս. կարգի, սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ հակաիրավ. (դիտավորյալ կամ անզգույշ գործողություն) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչ. պատասխանատվություն:

ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄ, պետության տարածք. կազմակերպման համակարգ, որի հիման վրա ձևավորվում ու գործում են պետ. իշխանության և կառավարման մարմինները: Նախատեսում է պետ. տարածքի բաժանում մարզերի, շրջանների, նհնգ-ների ևն: ՀՀ-ում վարչատարածաք. կառուցվածքը կարգավորվում է «Հայաստանի Հանրապետության վարչատարածաքային բաժանման մասին» (1995) օրենքով: Վտմ-ներ են մարզերն ու համայնքները: Մայրաքաղաքի կառավարման կարգը նույնպես սահմանվել է օրենքով:

ՎԱՐՍԱԿ, դաշտավյուկազգիների (հացազգիներ) ընտանիքի միամյա և բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 26 (70) տեսակ, ՀՀ-ում՝ 6 (7)՝ Կոտայքի, Գեղարքունիքի, Շիրակի, Վայոց ձորի, Սյունիքի և այլ մարզերում: Աշակության մեջ է ցանովի Վ.: Վ-ից պատրաստում են ալյուր, ձավար («Հերկուլես»), որոնք օգտագործվում են բուժ. և մանկ. սննդի մեջ:

ՎԱՐՍԱՆԴ, **գինեցեյ**, ծաղկի իգական օրգանը: Գոյանում է մեկ կամ մի քանի համախմբված պտղաթերթիկներով: Կազմված է սերմնարանից, սոնակից և սպիից: Փոշոտումից և բեղմնավորումից հետո փոխարկվում է *պտղի*:

ՎԱՐՏԱ (Warta), գետ Լեհաստանում, Օդրայի աջ վտակը: Երկ.՝ 808 *կմ*, ավազանը՝ 54,5 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 220 *մ³/վ*: Վիսլայի հետ կապված է Նոտեց վտակով և Բիդգոշչի ջրանցքով: Վ-ի ափին են Չենստոխովա, Պոզնան ք-ները:

ՎԱՐՈՒԺԱՆ Դանիել (Չպուկքյարյան Դանիել Գրիգորի, 1884–1915), բանաստեղծ, հաս. գործիչ: 1914-ին Կ. Պոլսում հրատարակել է *«Նաւաապարդ»* (հակոբ *Միրոնու* հետ) տարեգիրքը, մասնակցել *«Մեհեան»* հանդեսի խմբագրման աշխ-ներին: Հեղինակ է «Սարսուռներ» (1906, ներշնչանքի աղբյուր է դարձրել իրական կյանքը), «Յեղին սիրտը» (1909, ինչեցնում է ազգ. ու համամարդկային ցավի, վրեժի ու պայքարի երգը), «Հեթանոս երգեր» (1912, հայ գրկ-յան մեջ XX դարի սկզբին ծայր առած «հեթանոսական» շարժման ամենաամբողջ. արտահայտությունն է), «Հացին երգը» (հրտ.՝ 1921, երգում է լիարյուն ու ներդաշնակ, բնականորեն անեղծ, մի այլ աշխարհի սկիզբ դնող մարդու իդեալը) բանաստեղծությունների ու պոեմների ժող-ների: 1965-ին հրատարակվել է Վ-ի «Նամականին»: Մեծ եղեռնի զոհ:

ՎԱՐՈՒՆԳ, դդմազգիների ընտանիքի միամյա բանջարաբույս: Հայտնի է 30 տեսակ, ՀՀ-ում՝ 1 (ցանովի Վ.), որը մշակում են գրեթե բոլոր մարզերում: Պտուղները պարունակում են շաքարներ, եթերայուղ: Բերքատվությունը բաց գրունտում՝ 300–400 *ց/հա*, ջերմոցներում՝ 25–30 *կգ /մ²*:

ՎԱՐՈՒՆՑՅԱՆ Իսայի Սերգեյի (Սարգսի) (1898–1988), բուսաբույծ-ընտրասերումնաբան: ՀամԳԳԱ ակադ. (1949): Աշխ-նեը վերաբերում են հիբրիդացման առավել արդյունավետ մեթոդների մշակման, սորտափորձարկման հարցերին: ԽՍՀՄում 1-ինն է կիրառել (1930) «սադրիչ» միջավայրի մեթոդը վիլտադիմացկուն սորտերի ստացման նպատակով, որի շնորհիվ ստացել են բամբակենու արժեքավոր սորտեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949):

ՎԱՐՔ, շրջակա միջավայրի հետ կենդանի էակների փոխազդեցությունը, որը ներառում է նրանց շարժող. ակտիվությունն ու այդ միջավայրի նկատմամբ կողմնորոշումը: Կենդանիների և մարդու Վ. ուսումնասիրում են էթոլոգիան, հոգեբ-յունը, սոցիոլոգիան: Ոչ օրգ. առարկաների (օր.՝ էլեկտրոնի, մոլորակի, մեքենայի ևն) Վ-ի մասին կարելի է խոսել միայն պայմանականորեն: Վ. տերմինը կիրառելի է ինչպես առանձնյակների, անհատների, այնպես էլ նրանց համախմբությունների (կենսբ. տեսակի Վ., սոցիալ. խմբի Վ.) առնչությամբ: XX դ-ի կեսերից այն կիրառվում է նաև բարդ ինքնաշխատ ժամանակակից տեխնիկայի համար:

ՎԱՐՔԱԳՐՈՒԹՅՈՒՆ, միջնադարում լայնորեն տարածված գր. ժանր. ընդգրկում է քրիստ. եկեղեցու սրբադասած հոգևոր ու աշխարհիկ անձանց կենսագրությունները՝ վարքերը: Զևավորվել և զարգացել է Բյուզանդիայում քրիստոնեության տարածումից հետո (IV դ.): Առաջինն նմուշներից են Աստվածաշնչի սրբերի կյանքի նկարագրությունները: Վարքի, ինչպես և *վկայաբանության* հիմքում հերոսի իդեալականացման սկզբունքն է: Հայկ. Վ-յան լավագույն հուշարձաններից են Կորյունի «Վարք Մաշտոցի»-ն, Ներսես Շնորհալու, Գևորգ Սկևռացու վարքերը:

ՎԱՅԵՏԻՍ (Vacietis) Իոակիմ Իոակիմովիչ (1873–1938), լատիշ ռազմ. գործիչ, բանակի 2-րդ կարգի հրամ. (1935): Մասնակցել է ԱՀՊ-ին: Հոկտ. հեղ-յան ժամանակ իր գնդով անցել է խորհրդ. իշխանության կողմը: 1918-ին՝ Լատիշ. հրաձգ. դիվիզիայի հրամ., Մոսկվայում ձախ էսէռ. խռովության ճնշման զինվ. ղեկ-ներից: 1918–19-ին՝ ՌԽՖՍՀ ՋՈՒ գլխ. հրամ.: Բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ՎԱՈՒ (Wau), ք. Հվ. Սուդանում, Բահր էլ-Գազալ նհնգ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 150 հզ. (2011): Գղտ. շրջանի առևտր. կենտրոն է, տրանսպորտ. հանգույց:

ՎԱՈՒՉԵՐ (անգլ.՝ voucher), 1. փաստաթուղթ, որը վկայում է ապրանքների ու ծառայությունների դիմաց վճարումը (օր.՝ վճարված հաշիվ-ապրանքագիրը, մարված հաշիվը), վարկի տրամադրումը, դրամի ստացումը (ստացական) ևն: 2. Նույնն է, ինչ մասնավորեցման չեկը:

ՎԱՔՍՄԱՆ (Waksman) Զելման (1888–1973), ամերիկացի մանրէաբան և կենսաքիմիկոս: Առաջինն է անջատել մի շարք հակաբիոտիկներ: 1943-ին հայտնագործել է *ստրեպտոմիցինը*: Նոբելյան մրց. (1952):

ՎԵԲԵՐ (Weber) Կառլ Մարիա ֆոն (1786–1826), գերմանացի կոմպոզիտոր, դիրիժոր, երաժշտաքննադատ: Գերմ. ռոմանտիկ. օպերայի հիմնադիրը («Ազատ նետաձիգը», 1821, «Օբերոն», 1826, ևն), հեղինակ է նաև վիրտուոզ կոնցերտ. պիեսների («Պարի հրավեր», 1819, «Կոնցերտշտյուկ» դաշնամուրի և նվագախմբի համար, 1821) և այլ գործերի:

ՎԵԲԵՐ Մաքս (1864–1920), գերմանացի սոցիոլոգ, պատմաբան, տնտեսագետ: Հեղինակ է սոցիալ. իմացության մեթոդաբանությանը, քաղ., կրոնի, իրավունքի, բնապահպան. սոցիոլոգիային վերաբերող դաս. աշխ-ների: Ըմբռնող. սոցիոլոգիայի սոցիալ. գործողության տեսության հիմնադիրը, մշակել է լեգիտիմ իշխանության հայեցակարգ: Հեղինակ է «Բողոքական էթիկան և կապիտալիզմի ոգին» (1904–05) հիմնարար աշխ-յան:

ՎԵԲԵՐ Սիմոն (1866–1929), գերմանացի արևելագետ, հայագետ: Հեղինակ է «Ս. Գրոց յարգն ու արժէքը հին հայոց քով» (1896, հայ.՝ «ՀԱ», 1897), «Արարատը Սուրբ Գրոց մէջ» (հայ.՝ 1901), նաև եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկին, շարականներին, հայ մատենագրության պատմությանը, Կորյունի, Եղիշեի, Սամբրե Վերծանողի և ուր. երկերին վերաբերող աշխ-ների, «Կաթոլիկ եկեղեցին Հայաստանում» (1903) մենագրության: Վ. հայ-ից գերմ. և լատ. է թարգմանել II դ-ի հույն մատենագիր Իրենեոս Լուգդունացու «Յոյցք առաքելական քարոզութեանն» երկը, որը գիտ. աշխարհին հայտնի է միայն հայ. թարգմ-յամբ:

ՎԵԲԵՐ Վիլհելմ Էդուարդ (1804–1891), գերմանացի ֆիզիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1853): Աշխ-նե-

րը վերաբերում են էլեկտրականությանը և մագնիսականությանը: Կ. Ֆ. ***Գաուսի*** հետ կառուցել է (1833) Գերմանիայում առաջին հեռագրությունը և առաջարկել էլեկտրականության և մագնիսականության բացարձակ միավորների համակարգ: Արտածել է շարժվող լիցքերի փոխազդեցության օրենքը (առանց միջավայրի ազդեցության հաշվառման): Առաջադրել է էլ. լիցքի ընդհատունությունը և նյութի էլ. կառուցվածքի վարկածը:

ՎԵԲԵՐ, մագնիս. ինդուկցիայի և մագնիս. հոսքի միավորը ՄՄՀ-ում: Նշանակվում է *Վբ* (Wb), կոչվել է Վ. ***Վեբերի*** անունով: $1Վբ = 1Տլ \cdot մ^2 = 10^8$ ***Մաքսվել***:

ՎԵԲԵՐԻ ԱՊԱՐԱՏ, որոշ ոսկր. ձկների՝ շարժուն կերպով իրար միացած ոսկրիկների համակարգ, որը լողափամփուշտը միացնում է ներքին ականջին: Վ. ա. մասնակցում է ձայնի ընկալմանը և լողափամփուշտի ծավալի փոփոխությունները (ձկան ուղղահայաց տեղաշարժման ժամանակ) հաղորդում ներքին ականջ: Կոչվել է անատոմ Է. Գ. Վեբերի (1795–1878) անունով:

ՎԵԲԻ ՇԵՖԵԼԻ, գետ Եթովպիայում և Սոմալիում: Երկ.՝ 2490 *կմ*, ավազանը՝ 194 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 320 *մ³/վ*: Ձորերն օգտագործվում են ոռոգման նպատակով, Հնդ. օվկ–ի ափից 40 *կմ* հեռու կորչում ճահճուտներում:

ՎԵԲՍՏԵՐ, **Ուեբստեր** (Webster), Չառլզ Քինգսլի (1886–1961), անգլիացի պատմաբան: 1950–54-ին՝ Մեծ Բրիտանիայի ակադ-ի նախագահ: Որպես անգլ. պատվիրակության խորհրդատու՝ մասնակցել է 1919–20-ի Փարիզի հաշտության խորհրդաժողովին, որպես անգլ. պատվիրակության անդամ՝ Դումբարտոն-Օքսի (1944) և Սան Ֆրանցիսկոյի (1945) խորհրդաժողովներին: Վ.-ի աշխ-ները գլխավորապես վերաբերում են Անգլիայի XIX դ-ի 1-ին կեսի արտաքին քաղ-յանը:

ՎԵԳԱ (Vega) Գարսիլասո դե լա (1498-ի և 1503-ի միջև–1536), իսպանացի բանաստեղծ, ռազմիկ: Հեղինակ է սոնետների, կանցոնների, էլեգիաների (հրտ.՝ 1543), որոնք աչքի են ընկնում ոճի պարզությամբ ու մեղեդայնությամբ: Իտալ. բանաստեղծության հիմքի վրա ստեղծել է իսպ. նորառոճ պոեզիա, մեծ ազդեցություն է ունեցել XX դ-ի իսպ. պոեզիայի վրա («Նորգարսիլասական» հոսանք): Զոհվել է:

ՎԵԳԱ (α Քնար), Քնար համաստեղության 0-ական ա. մ. աստղ, երկնքի Հս. կիսագնդի ամենապայծառ աստղերից: Վ., Դենեբը (α Կարապի) և Ալտաիրը (α Արծվի) կազմում են այսպես կոչված ամառ. եռանկյունին:

«ՎԵԳԱ» [«Վեներա–Գալեյա» (Հալլեյի գիսավոր) ծրագրի կրճատ անվանումը], ԽՍՀՄ-ում ստեղծված միջմոլորակ. ինքնաշխատ կայանների («Վ.-1» և «Վ.-2») անվանումը, որոնք նախատեսվել են 1984–86-ին Վեներա մոլորակը և Հալլեյի գիսավորն ուսումնասիրելու համար: 2 կայաններն ըստ կառուցվածքի ու նշանակման նույնական էին: Ծրագրի մշակմանն ու իրականացմանը մասնակցել են մի շարք եվրոպ. երկրներ:

ՎԵԳԱ ԿԱՐՊԻՈ (Vega Carpio) Լոպե Ֆելիքս դե, **Լոպե դե Վեգա** (1562– 1635), իսպանացի դրամատուրգ, բանաստեղծ, արձակագիր: Հեղինակ է ավելի քան 2 հզ. պիեսի (որից 500-ը՝ հրտ.), այդ թվում՝ «Անմեղների արյունը» (1623), «Սևիլիայի աստղը» (1623, հայ.՝ 1959), «Պատիժը վրեժ չէ» (հրտ.՝ 1635), «Սալամեացի ալկալդը» (գրել է մինչև 1610-ը), «Պերիվանիեսը և Օկանիայի կոմանդորը» (հրտ.՝ 1614), «Ֆուենտե Օվեխունա» (հրտ.՝ 1619), «Շունը դեզի վրա» (հրտ.՝ 1618, հայ.՝ «Պարտիզպանի շունը», 1956), «Սափորով աղջիկը» (հրտ.՝ 1646), «Պարերի ուսուցիչը» (1593) ևն, 20-ից ավելի պոեմների, քնար. բանաստեղծությունների, նովելների, վեպերի:

ՎԵԳԵՆԵՐ (Wegener) Ալֆրեդ Լոթար (1880–1903), գերմանացի երկրաֆիզիկոս: Մասնակցել է գրենլանդ. գիտարշավների (1906–08, 1912–13, 1929–30-ի՝ ղեկ.): Հեղինակ է մայրցամաքների դրեյֆի տեսության (1912), որը մորիլիզմի առաջին գիտավարկածն է:

ՎԵԳԵՏԱՏԻՎ ԲԱԶՄԱՅՈՒՄ, բազմաբջիջ նոր օրգանիզմի առաջացումը մայրական բջջի մասերից՝ բողբոջման, կիսման (ցածրակարգ բույսեր և կենդանիներ) ճանապարհով, նաև ընդերացողունի, ընձյուղների, կոճղեզների, պալարների ևնի (բարձրակարգ բույսեր) միջոցով: Կիրառվում է պտղաբուծության, բանջարաբուծության և գղտ-յան այլ ճյուղերում: Վ. բ. երբեմն դասում են անսեռ բազմացման շարքին:

ՎԵԳԵՏԱՏԻՎ ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ (լատ.՝ vegeto – գրգռել, կենդանացնել), մարդու և ողնաշարավոր կենդանիների նյարդ. համակարգի մաս, որը կարգավորում է ներքին օրգանների և համակարգերի (արյան շրջանառության, շնչառության, մարսողության, արտաթորության, բազմացման ևն) գործունեությունը, օրգանիզմի հյուսվածքների նյութափոխանակությունը և ֆունկցիոնալ վիճակը (գրգռականություն, աշխատունակություն ևն): Բաժանվում է սիմպաթիկ և պարասիմպաթիկ նյարդ. համակարգերի:

ՎԵԳԵՏԱՑԻՈՆԱՅԻՆ ՇՐՋԱՆ, 1. բույսերի ածի և զարգացման շրջան, որի ընթացքում հնարավոր են սերմերի կամ սպորների ծլարձակումը, բողբոջների բացվելը, արմատների, ցողունների, տերևների աճը, բազմացման օրգանների ձևավորումը, հասուն պտուղների ու սերմերի առաջացումը: 2. Տարվա շրջան, երբ օդերևութաբան. պայմանները բարենպաստ են բույսերի ֆիզիոլոգ. շարժընթացների համար: Բուսաբուծության մեջ Վ. շ. են անվանում մշակաբույսերի աճման սկզբից մինչև բերքահավաքն ընկած ժամանակաշրջանը:

ՎԵԳՆԵՐ (Wegner) Արմին Թեոֆիլ (1886–1978), գերմանացի գրող, հրապարակախոս: Իրավագիտ-յան դ-ր: Հեղինակ է «Երկու քաղաքների միջև» (1909), «Աննա իմ խոսքին, Աննա Մարիա» (1912), «Քաղաքների դիմապատկերը» (1917), «Հազար նպատակներով փողոցը» (1924) բանաստեղծությունների ժող-ների, «Խոստովանություն» (1922), «Մինի կամ Աշխարհը ներքնից» (1929) վեպերի:

1915–16-ին գերմ. սան. ծառայության սպա Վ. Թուրքիայում ականատես է եղել Հայոց ցեղասպանությանը: Լուսանկարել է սպանդի բազմաթիվ տեսարաններ, գրի առել իր տեսածն ու ապրածը և լուսանկարների հետ ուղարկել առանձին մարդկանց ու պարբ-ների: Հետագայում դրանք զետեղել է «Ճանապարհ առանց վերադարձի» (1919, հայ.՝ 2000) գրքում: 1919-ին գրել է «Բաց նամակ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնին»՝ ձգտելով հասնել Հայոց ցեղասպանության կազմակերպիչներին պատժելուն, բարձրացրել փրկվածներին հայրենի տները վերադառնալու, կորցրած ունեցվածքի փոխհատուցումը ստանալու իրավունքի և այլ հարցեր: Սողոմոն ***Թեհլերյանի*** դատավարության ժամանակ հանդես է եկել որպես վկա: Արևմտահայերի ողբերգ. ճակատագրի մասին են Վ.-ի «Ճիչ Արարատից», «Արմենիադա», «Հայ մորը», «Խղճիս ձայնը երբեք չի լռելու» (հայ.՝ 2006) ևն հրապարակումներ: 1927, 1968, 1976-ին այցելել է Հայաստան: 1996-ին Վ.-ի գերեզմանից բերված հողով սափոր է ամփոփվել Հայոց ցեղասպանության հուշահամալիրի Հուշապատում:

ՎԵԴԱՅԱԿԱՆ ԼԵԶՈՒ, ինդ. հնագույն գրկ-յան՝ ***վեդաների*** լեզուն: Գրավոր հնագույն հուշարձանները (Ռիգվեդա, Սամավեդա, Յագուրվեդա, Աթհարվավեդա ժող-ները) ավանդվել են մ. թ. ա. III հզ–ամյակի վերջից մինչև I հզ–ամյակի սկզբները:

ՎԵԴԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, Հնդկաստանի ամենահին կրոն. համակարգերից, որի գաղափարախոսությունը հիմնված է ***վեդաների*** վրա (ամենահինը մ. թ. ա. X դ–ով թվագրվող ժող-ն է՝ Ռիգվեդան): Վեդայական կանոնի տեքստերը բաժանվում են 2 մասի՝ շրուտիի (բառացի՝ «լսված», այսինքն՝ հայտնությամբ տրված) և սմրիտիի (բառացի՝ «հիշված», այսինքն՝ ավանդություն): Շրուտին ավանդաբար բաժանվում է 4 վեդաների՝ Ռիգվեդա, Յաջուրվեդա, Սամավեդա և Աթհարվավեդա ժող-ների, որոնք կոչվում են նաև սամհիտ:

ՎԵԴԱՆԵՐ, **վեդայական գրականություն** (սանսկրիտ՝ վեդա – բառացի՝ գիտելիք), հնդ. բանահյուսության հնագույն հուշարձաններ, ստեղծվել են մ. թ. ա. II հզ–ամյակի վերջ–I հզ–ամյակի 1-ին կեսին՝ ***վեդայական լեզվով***: Բաղկացած են հիմների, երգասացությունների ու զոհաբեր. բանաձևերի 4 ժող-ից (Ռիգվեդա, Սամավեդա, Յագուրվեդա, Աթհարվավեդա), բրահմաններից, որոնց հետևում են արանյակներն ու ուպանիշադները (չափածո և արձակ փիլ. երկեր): Հայ. են թարգմանվել Վ.-ի մի շարք նմուշներ:

ՎԵԴԱՆՏԱ (սանսկրիտ – բառացի՝ վեդաների ավարտ), հնդ. առավել տարածված կրոնափիլ. ուսմունք: Լայն իմաստով՝ Վ.-ի շարքին են դասվում բուն Վ., պուրվա-միմանսան, վիշնուականության և շիվայականության որոշ ուսմունքներ, ինչպես նաև նեոհինդուիզմը: Վ. 6 ուղղափառ (վեդաների հեղինակությունն ընդունող) փիլ. համակարգերից է: «Վեդանտա-սուտրա»-ն (կամ «Բրահմա-սուտրա») վերագրվում է Բադարայանա (IV–III դդ.) իմաստունին: Վ. հիմնվում է ***աթմանի*** (անհատ. հոգևոր սկիզբ) և բրահմանի (բարձրագույն ռեալականություն) մասին շրուտիի (հինդուիզմի «սրբազան տեքստեր») դրույթների մեկնաբանման վրա: Նոր ժամանակներում Վ.-ի ներկայացուցիչներից են ***Ռամակրիշնան***, ***Վիվեկանանդան***, ***Ռադհակրիշնան***:

ՎԵԳԵՆԵԵՎ, Բորիս Եվգենևիչ (1884/85–1946), ռուս հիդրոտեխնիկ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1932): Մասնակցել է ԳՈԷԼՌՈ-ի պլանի կազմմանը, Վոլխովյան և Դնեպրյան ջրէկների շին-յան ղեկ-ներից: Աշխ-ները վերաբերում են ջրէկների շին-յան տնտ. հիմնավորման տեսությանը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1943):

ՎԵԴԵՆԻՆ Վյաչեսլավ Պետրովիչ (ծ. 1941), ռուս մարզիկ (դահուկավազք)։ ԽՍՀՄ ս. վ. (1970)։ Ձմեռ. օլիմպ. խաղերի (1972) և աշխարհի (1970) երկակի, ԽՍՀՄ բազմակի (1966–73) չեմպիոն՝ դահուկավազքի տարբեր ձևերում։

ՎԵԴԻ, գետ Արարատի մարզում, Արաքսի ձախ վտակը։ Սկիզբ է առնում Գեղամա լ–շղթայի հվ–արմ. լանջերից՝ մոտ 2760 *մ* բարձր–ից։ Երկ.՝ 58 *կմ*, ավազանը՝ 633 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 2,04 *մ*^{3}/*վ*, հոսքը՝ 87մլն *մ*^{3}։ Հոսում է արմ., Խոսրով վտակն ընդունելուց հետո՝ հվ–արմ.։ Վերին հոսանքում լեռնային է, Վեդի ք–ից հետո՝ հարթավայրային։ Մնումը հիմնականում հալոցքային (47 %) և ստորերկրյա (42 %) է, վարարման ընթացքում ձևավորվում է տարեկան հոսքի 70 %–ը։

«ՎԵԴՈՄՈՍՏԻ» («Ведомости» – «Տեղեկագրեր»), ռուս. առաջին տպագիր թերթը՝ Պետրոս I–ի հրամանով (1702–27, մինչև 1711–ը՝ Մոսկվա, ապա՝ Ս. Պետերբուրգ)։ 1728–ից որպես շարունակություն լույս է տեսել «Սանկտ Պետերբուրգսկիե վեդոմոստի» թերթը։

ՎԵԶԱԼԻՈՒՍ (Vesalius) Անդրեաս (1514–1564), ֆլամանդացի բնախույզ, գիտ. անատոմիայի հիմնադիրը։ Առաջիններից է ուսումնասիրել մարդու օրգանիզմը դիահերձումների միջոցով։ «Մարդու մարմնի կառուցվածքի մասին» (1543) հիմնարար աշխ–յան մեջ տվել է բոլոր օրգանների և համակարգերի կառուցվածքի գիտ. նկարագիրը, ցույց է տվել իր նախորդների (այդ թվում՝ Կ. *Գալենի*) սխալները։ Հետապնդվել է եկեղեցու կողմից։ Զոհվել է նավաբեկության ժամանակ։

ՎԵԶԻՐ, մահմեդ. երկրների մեծ մասում զինվ. և քաղաքաց. բարձրագույն աստիճանավորներին տրվող տիտղոս։ Մեծ Վ. երկրի փաստացի ղեկ–ն էր, պատերազմի ժամանակ համարվում էր բանակի գերագույն հրամ–ր, տնօրինում էր երկրի ֆին. և դատ. գործերը, սուլթանի անունից հրապարակում հրովարտակներ, կնքում դաշնագրեր։ Վ–ի պաշտոնը Թուրքիայում վերացել է 1922–ին՝ հանրապետության հաստատումով։

ՎԵԼԱՍԿԵՍ, Ռոդրիգես դե Սիլվա Վելասկես (Rodriguez de Silva Velásquez), Դիեգո (1599–1660), իսպանացի գեղանկարիչ։ 1623–ից՝ Ֆիլիպ IV–ի պալատ. նկարիչը։ Պատմ. ժանրի հիմնադիրներից եվրոպ. արվ–ում («Բրեդայի հանձնումը», 1634–35, ևն)։ «Բաքոս» (մոտ 1630), «Մանող կանայք» (1657) գործերում միահյուսել է դից. և կենցաղ. ժանրի տարրեր, ստեղծել նաև տեսարաններ կենցաղ. թեմաներով («Նախաճաշ», մոտ 1617–18), բնութագր. դիմանկարներ («Ինոկենտի X», 1650, «Մենինները», 1656, խմբակ. դիմանկար, ևն)։

ՎԵԼԴԵ, վան դե Վելդե (van de Velde), XVII դ–ի հոլանդացի նկարիչների ընտանիք։ 1. **Էսայաս վան դե Վ.** (1587–1630), հոլ. ազգ. բնանկարի հիմնադիրներից, որոնց բնորոշ են պարզ կոմպոզիցիաները և բնության հուզականությունը։ **Վիլլեմ Ավագ** (մոտ 1611–1693) և որդին՝ **Վիլլեմ Կրտսեր** (1633–1707), 1672–ից աշխատել են Անգլիայում։ Հեղինակ են ծով. խաղաղ բնապատկերների։ Վիլլեմ Կրտսերի եղբայրը՝ **Ադրիան** (1636–1672), ստեղծել է դիմանկարներ, կրոն. կոմպոզիցիաներ, հովվերգ. բնանկարներ։

ՎԵԼԵՍ ԴԵ ԳԵՎԱՐԱ (Vélez de Guevara) Լուիս (1578/79–1644), իսպանացի գրող։ Հեղինակ է աստվածաշնչ. և ազգ. ու համաշխ. պատմությունների թեմաներով պիեսների, «Կաղ սատանան» (1641) խաբեբայապատում վեպի, որի հիման վրա Ա–Ռ. Լեսաժը (1668–1747) գրել է համանուն վեպը (1707)։

ՎԵԼԻԽՈՎ Եվգենի Պավլովիչ (ծ. 1935), ռուս. ֆիզիկոս։ ՌԳԱ ակադ. (1974, փոխնախագահ՝ 1978–96–ին)։ Սոց. աշխ. հերոս (1985)։ Աշխ–ները վերաբերում են պլազմայի ֆիզիկային, մագնիս. հիդրոդինամիկային, կառավարվող ջերմամիջուկ. սինթեզի հիմնախնդրին, նանոտեխնոլոգիաներին։ ԽՍՀՄ (1977), ՌԴ (2002) Պետ., Լենինյան (1984) և մի շարք այլ մրց–ներ։

ՎԵԼԻՆԳՏՈՆ, Ուելինգթոն (Wellington), Արթուր Ուելսլի (1769–1852), անգլիացի զորավար, պետ. գործիչ, դիվանագետ, ֆլդմ. (1813), դուքս (1814), տորի։ 1796–ին՝ անգլ. զորքի հրամ. Հնդկաստանում։ 1807–1808–ին՝ պետ. քարտուղար Իռլանդիայի գործերով։ Նապոլեոնյան Ֆրանսիայի դեմ պայքարում գլխավորել է դաշնակից զորքերը Պիրենեյան թ–կղզում (1808–13) և անգլո–հոլ. բանակը՝ Վաթեռլոոյի ճակատամարտում (1815)։ 1815–18–ին՝ օկուպացիոն զորքերի հրամ. Ֆրանսիայում։ 1827–52–ին՝ անգլ. բանակի գլխ. հրամ., 1828–30–ին՝ վարչապետ, 1834–35–ին՝ ԱԳ նախարար։


ՎԵԼԻՍՅԻԽԵՒ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, հայկ. ճարտ. հուշարձան ՎՀ Գուրջանիի շրջանի Վելիսցիխե գ–ում։ Պահպանվել են կից 2 եկեղեցի և զանգակատուն։ Սբ Աստվածածին եկեղեցին զույգ հիմնամույթերով թաղածածկ դահլիճ է (XIX դ.), նորոգվել է 1913–ին։ 1888–ին կառուցվել է եկեղեցու զանգակատունը (14 *մ* բարձր.)՝ երկհարկ աշտարակով, որն աղյուսաշեն հարդարանքով առանձնանում է ինքնատիպ ճարտ. նկարագրով։

ՎԵԼՉԻՆՍԿԻ Սերգեյ Արկադևիչ (1896–1974), էլեկտրավակուում. տեխնիկայի բնագավառի ռուս. գիտնական։ ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1953)։ Սոց. աշխ. հերոս (1956)։ Ստեղծել է մի շարք էլեկտրոն. սարքեր։

ԽՍՀՄ Պետ. (1946), Լենինյան (1962) մրց–ներ։

ՎԵԿՍԼԵՐ Վլադիմիր Իոսիֆովիչ (1907–1966), ռուս. ֆիզիկոս։ ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1958)։ Լիցքավորված մասնիկների արագացման ֆիզիկայի և տեխնիկայի գիտ. դպրոցի հիմնադիրը։ Առաջարկել է ինքնափուլավորման սկզբունք, մշակել արագացման կոլեկտիվ մեթոդի հիմունքները։ Վ–ի ղեկավարությամբ ստեղծվել են խորհրդ. առաջին սինքրոտրոնը (1947) և սինքրոֆազատրոնը (1957)։ Վ–ի ղեկավարությամբ է աշխատել նաև Գուրգեն *Ասկարյանը*։ ԽՍՀՄ Պետ. (1951), Լենինյան (1959) մրց–ներ։

ՎԵԿՏՈՐ (լատ.՝ vector – տանող, կրող), 1. **մաթեմատիկայում**, որոշակի երկ–յուն և ուղղություն ունեցող հատված։ Սովորաբար Վ. նշանակում են թավատառով՝ **a** կամ $\overrightarrow{AB}$ (առաջին տառը հատվածի սկզբնակետն է, երկրորդը՝ վերջնակետը)։ Վ–ի բացարձակ մեծությունը (երկ–յուն) գրվում է |**a**| կամ AB։ 2 վեկտորներ իրար հավասար են, եթե ունեն նույն երկ–յունը և ուղղությունը (այսինքն՝ զուգահեռ են և միանման կողմնորոշված)։ Եթե Վ–ի կողմնորոշումը փոխվում է հակառակ ուղղության, փոխվում է նաև նրա նշանը (նկ–ի վրա **b** = **a, c** = – **a**)։ Վ–ով պատկերում են, այսպես կոչված, վեկտոր. մեծությունները՝ ուժը, արագությունը ևն։ Վ–ի հետ կատարվող գործողությունն ուսումնասիրում են



վեկտորական հաշվում։ 2. **Մոլեկուլային գենետիկայում**, ԴՆԹ–ի ինքնուրույն պատճենվող մոլ., որն ունակ է իր մեջ ներառելու օտարածին ԴՆԹ (գեներ) և այն փոխադրելու բջիջներ, որոնց ժառանգ. հատկանիշները ցանկանում են փոխել։

ՎԵԿՏՈՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՅԱԼ, **a** և **b** վեկտորների, նշանակվում է **P** = [**a, b**] կամ **a** x **b,** թվապես հավասար է այն զուգահեռագծի մակերեսին, որը կառուցվում է **a** և **b** վեկտորներով, և ուղղահայաց է այդ զուգահեռագծի հարթությանը։ **P** Վ. ա–ի ուղղությունը կախված է **i, j, k** կոօրդինատ. համակարգի ընտրությունից։

ՎԵԿՏՈՐԱԿԱՆ ԴԱՇՏ, տիրույթ, որի յուրաքանչյուր P կետում տրված է **a**(p) վեկտորը։ Վ. դ. հասկացությանը հանգեցնում են բազմաթիվ ֆիզ. երևույթներ և շարժընթացներ (օր.՝ հեղուկում շարժվող մասնիկների արագության վեկտորները ժամանակի յուրաքանչյուր պահի կազմում են Վ. դ.)։

ՎԵԿՏՈՐԱԿԱՆ ՀԱՇԻՎ, մաթ–ի բաժին. ուսումնասիրում է վեկտորների հետ կատարվող գործողությունները։ Վ. հ. բաղկացած է **վեկտորական հանրահաշվից** և **վեկտորական վերլուծությունից**։ Վեկտոր. հանրահաշվի կանոններն արտացոլում են վեկտոր. մեծությունների հետ կատարվող գործողությունների հատկությունները։ Օր.՝ **a** և **b** վեկտորների գումար անվանում են **a** վեկտորի սկիզբը **b** վեկտորի ծայրին միացնող վեկտորը, եթե **a**–ի ծայրը և **b**–ի սկիզբը համընկնում են։ Այս կանոնը կապված է ուժերի կամ արագությունների գումարման կանոնի հետ (տես *Ուժերի զուգահեռագիծ*)։ Վ. հ–ում սահմանված է վեկտորների 2 տիպի բազմապատկում՝ սկալյար և վեկտորական (տես *Սկալյար արտադրյալ, Վեկտորական արտադրյալ*)։ Եթե **i, j, k**–ն 3 փոխուղղահայաց միավոր վեկտորներ են տարածության մեջ, ապա ցանկացած **a** վեկտոր միակորեն ներկայացվում է $\mathbf{a} = a_1\mathbf{i} + a_2\mathbf{j} + a_3\mathbf{k}$ տեսքով։ a_1, a_2, a_3 թվերը կոչվում են **a** վեկտորի պրոյեկցիաներ (կոօրդինատներ)։ Վեկտոր. վերլուծության հիմքում ընկած են վեկտոր–ֆունկցիայի դիֆերենցումը և ինտեգրումը։

ՎԵԿՈՒԱ, Իլյա Նեստորի (1907–1977), վրացի մաթեմատիկոս և մեխանիկոս։ ՎԽՍՀ ԳԱ ակադ. (1946, նախագահ՝ 1972–77–ին), ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1958)։ Սոց. աշխ. հերոս (1969)։ Աշխ–ները վերաբերում են դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումներին, ֆունկցիաների տեսությանը, թաղանթների տեսությանը։ ԽՍՀՄ Պետ. (1950, 1984՝ հետմահու), Լենինյան (1963) մրց–ներ։

«ՎԵՀԱՓԱՌԻ ԱՎԵՏԱՐԱՆ», X–XI դդ–ի ձեռագիր մատյան։ 1978–ին *Վազգեն Ա.* կաթողիկոսը նվիրել է Մտնդ–ին (ձեռ. № 10780, որտեղից էլ՝ անվանումը)։ Ընդօրինակվել է Փոքր Հայքում կամ Կապադովկիայի մերձակա շրջաններում։ Գրիչն ու մանրանկարիչը հայտնի չեն։ «Վ. Ա.» պահպանել է հին պապիրուսի կամ մագաղաթե գալարաթերթի պատկերազարդման ինագույն ձևերը։ Այդ առումով «Վ. Ա.»–ով Հայաստանում սկսվել է պատկերազարդման նոր՝ տեքստ. մանրանկարների համակարգը (67 մանրանկար, 5–ը՝ ամբողջ էջի վրա)։

ՎԵՀՈՒՆԻ Ազատ Թովմասի (1919–մ.թ.անհտ), երկրաբան: Երկրբ. գիտ. դ-ր (1980), պրոֆ. (1983): ՀԽՍՀ վաստ. երկրաբան (1967): 1991-ից՝ ԱՄՆ-ում: Աշխ-ները վերաբերում են ընդհ. երկրբ-յան, պալեոգենի ու նեոգենի շերտագրության և երկրբ. քարտեզագրության հարցերին:

ՎԵՂԱՐ (լատ.՝ velum – փող կամ velarium – վարագույր), քրիստոնյա կուսակրոն հոգևորականների սրածայր գլխանոց (խորհրդանշում է եկեղեցու գմբեթը): Ծածկույթն առջևից իջնում է մինչև աչքերը, իսկ հետևից՝ գոտկատեղից քիչ ներքև: Ամենայն հայոց կաթողիկոսի Վ-ին, որպես պատվանշան, ավելացվում է խաչ:

ՎԵՄՅԱՆ Ավետիս Սարգսի, **Տեր Գաբրեգին** (1847–1895), ազգ-ազատագր. շարժման գործիչ: ՀՀՌ կուս-յան անդամ: Եղել է զինագործ: Գործունեությունը դյուրացնելու նպատակով ձեռնադրվել է քահ. (Տեր Գաբրեգին անունով) և շարունակել զենք պատրաստելը: 1895-ի Կարինի կոտորածի ժամանակ փորձել է կազմակերպել հայերի ինքնապաշտպ-յունը: Զոհվել է մարտում:

ՎԵՅԳԱՆ (Weygand) Մաքսիմ (1867–1965), ֆրանսիացի գեն. (1916): Ֆրանսիայի ակադ-ի անդամ (1931): 1918-ից՝ Գերագույն գլխ. հրամանատարության շտաբի պետ: 1930–35-ին՝ ԳԾ պետ, Բարձրագույն ռազմ. խորհրդի փոխնախագահ: 1940-ին «Վիշի»-ի կառ-յան ազգ. պաշտպ-յան նախարար: 1941-ին համաձայնագիր է կնքել ԱՄՆ-ի հետ: 1942–45-ին եղել է գերմ. ճամբարում: 1948-ին արդարացվել է:

ՎԵՅԴԵ Ադամ Ադամովիչ (1667–1720), ռուս. հետևազորի գեն.: 1695 և 1696-ի Ազովյան արշավանքների, 1700–21-ի Հս. պատերազմի, 1711-ի Պրուս. արշավանքի մասնակից: 1698-ին կազմել է «Զինվորական կանոնադրություն» («Վեյդեի կանոնադրություն»), որը մի քանի տարի կիրառվել է ռուս. բանակում: 1717-ից՝ Զինվ. կոլեգիայի 2-րդ նախագահը:

ՎԵՅԼ (Weil) Անդրե (1906–1998), ֆրանսիացի մաթեմատիկոս: Մաթեմատիկոսների այն խմբից է, որոնք աշխատել են ***Բուրբակի*** կեղծանունով: Աշխ-ները վերաբերում են թվերի, անընդհատ խմբերի տեսություններին և հանրահաշվ. երկրչփ-յանը: Ներմուծել է «վերացական հանրահաշվային բազմազանություն» և «հավասարաչափ տարածություն» հասկացությունները:

ՎԵՅԼ Իրժի (1900–1959), չեխ գրող: Հեղինակ է «Մոսկվան սահման է» (1937), «Փայտե գդալ» (1938, հրտ.՝ 1992), «Կյանքը աստղի հետ» (1949), «Մենդելսոնը տանիքին» (հրտ.՝ 1960) վեպերի: «Էլեգիա 77 297 զոհերին» (1958) վավերագր. երկում անդրադարձել է հրեաների ողբերգ. ճակատագրին:

ՎԵՅՆ (Vane) Ջոն Ռոբերտ (1927–2004), անգլիացի քիմիկոս և դեղաբան: Լոնդոնի թագավոր. ընկ-յան անդամ, փոխնախագահ (1985–87): Աշխ-ները վերաբերում են պրոստագլանդինների անջատմանը և նրանց քիմիայի ու կենսբ-յան ուսումնասիրությանը:

Նոբելյան (1982, Ս. ***Բերգստրյոմի*** և Բ. ***Սամուելսոնի*** հետ), Ա. Լասկերի մրց-ներ:

ՎԵՅՆԻՆԳԵՐ (Weininger) Օտտո (1880–1903), հրեա փիլ. և հոգեբան: Նրա «Սեռը և բնավորությունը» (1903) երկը սենսացիոն հաջողություն է ունեցել XX դ-ի 1-ին տասնամյակում Ավստրիայում և Գերմանիայում: Ցուցադրաբար ինքնասպան է եղել այն տանը, որտեղ վախճանվել է Լ. վան Բեթհովենը:

ՎԵՅՍ (Weiss) Պիեռ Էռնեստ (1865–1940), ֆրանսիացի ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են մագնիս. երևույթների ֆիզիկային: 1907-ին առաջ է քաշել վարկած ֆեռոմագնիսների ատոմների միջև ներքին փոխազդեցության գոյության մասին, որը հանգեցնում է նրա ինքնակամ մագնիսացմանը: Բացահայտել է, ***պարամագնիսների*** մագնիս. ընկալունակության կախվածությունը ջերմաստիճանից՝ Կյուրիի կետից վերև (***Կյուրի–Վեյսի օրենք***): Բացահայտել է ***մագնիսակալորիականության երևույթը***:

ՎԵՅՍՄԱՆ (Veismann) Ավգուստ (1834–1914), գերմանացի կենդանաբան և էվոլյուցիոն ուսմունքի տեսաբան: Կանխատեսել է գեների դիսկրետության, քրոմոսոմներում նրանց տեղադրության և օնտոգենեզում նրանց նշանակության մասին ժամանակակից պատկերացումները: ***Նեոդարվինիզմի*** հիմնադիրներից:

ՎԵՆԳԵՐՄԿԻ Վադիմ Վլադիմիրովիչ (1932–1989), ռուս. էներգետիկ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1981): Աշխ-ները վերաբերում են բարձրարդյունավետ էներգ. կայանքների ստեղծմանը: Լենինյան (1966), ԽՍՀՄ Պետ. (1977) մրց-ներ:

ՎԵՆԴԱ ԼԵՋՈՒ, ***չիվենդա***, ՀԱՀ-ի պետ. լեզուներից: Պատկանում է բենուե-կոնգոլեզյան լեզվաընտանիքին: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՎԵՆԵՄՈՒԵԼԱ (Venezuela), **Վենեսուելայի Բոլիվարյան Հանրապետություն** (República Bolivariana de Venezuela), պետություն Հվ. Ամերիկայում: Սահմանակից է Գայանային, Բրազիլիային և Կոլումբիային: Տարածքը՝ 916,4 հզ. *կմ²*, բն.՝ 30,7 մլն (2015): Մայրաքաղաքը՝ ***Կարակաս***: Պետ. լեզուն՝ իսպ.: Կառավարման ձևը՝ նախագահահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Հավատացյալների մեծ մասը քրիստոնյա (կաթոլիկ) է: Բաժանված է 23 վարչ. նահանգ-ների: Անդամակցում է ՄԱԿ-ին, ՆԱԵԿ-ին: Զարգացող տնտ-յամբ երկիր է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 13,2 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է նավթ, բոքսիտներ, սուրճ, ածուխ, նիկել, ծաղիկներ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ բոլիվար:

Վ-ի տարածքում հնագույն ժամանակներից բնակվել են հնդկացիական ցեղեր: 1498-ին երկրի ափերը հայտնաբերել է Ք. Կոլումբոսը: 1499-ին իսպանացիները երկիրն անվանել են Վ. (Փոքր Վենետիկ): XVI դ-ի սկզբին իսպանացի կոնկիստադորներն սկսել են երկրի գաղութացումը: 1811-ին, Ամերիկայի իսպ. գաղութների անկախության պատերազմում, Վ. նվաճել է անկախություն (առաջին հանրապետություն), որը, սակայն, 1812-ին կորցրել է: 1818–30-ին եղել է Մեծ Կոլումբիայի հանրապետության կազմում: Անկախացել է 1830-ին: XX դ-ի սկզբին Վ-ում նավթի պաշարների հայտնաբերման արդյունքում սկսվել է ամերիկ. կապիտալի ներհոսքը: ԵՀՊ-ի ժամանակ ԱՄՆ-ն ամբողջությամբ վերահսկել է երկրում նավթի արդյունահանումն ու վերամշակումը: 1940-ի վերջից մինչև 1960-ի վերջը հաստատվել է բռնատիր. վարչակարգ: 1960-ական թթ-ի վերջին անցել է ժողովրդավար. կառավարման՝ երկկուս. համակարգով: Ժողովրդավար. գործողություն (հիմն.՝ 1941) և Սոցիալքրիստ. (հիմն.՝ 1946) կուս-յունները կազմավորել են կառ-յուն մինչև 1999-ը, երբ նախագահ է ընտրվել Հայրենասիր. բևեռ շարժման առաջնորդ Ու. Չավեսը: 2000-ին հաստատվել է երկրի նոր անվանումը՝ Վ-ի Բոլիվարյան Հանրապետություն: Ու. Չավեսի մահից (2013) հետո նախագահ է ընտրվել Ն. Մադուրոն:

ՎԵՆԵՄՈՒԵԼԱՑԻՆԵՐ (ինքնանվանումը՝ venezolanos), ժողդ. Վենեսուելայի հիմն. բնակչությունը: Ընդհ. թիվը՝ շուրջ 29,8 մլն (2010, 29 մլն-ը՝ Վենեսուելայում): Հիմնականում մետիսներ, մուլատներ և սամբոներ են, 20 %-ը՝ եվրոպեոիդներ, 10 %-ը՝ նեգրոիդներ, 1 %-ը՝ հնդկացիներ: Խոսում են իսպ.: Հավատացյալները հիմնականում կաթոլիկ են:

ՎԵՆԵՏԻԿԻ ԴՊՐՈՑ, 1. **գեղանկարչության մեջ**, գեղ. դպրոց Իտալիայում: Ծաղկել է Վերածննդի շրջանում՝ XV–XVI դդ-ի 2-րդ կեսին (Բելլինի ընտանիքը, Վ. Կարպաչչո, Ջորջոնե, Տիցիան, Պ. Վերոնեզե, Յ. Տինտորետտո) և XVIII դ-ում (Ջ. Բ. Տիեպոլո, Ա. Կանալետտո, Պ. Լոնգի, Ֆ. Գվարդի): Վ. դ-ին բնորոշ են կենսահաստատ սկիզբը, աշխարհի բանաստեղծ. ընկալումը, նուրբ գուներանգը: 2. Ուղղություն XVI դ-ում և XVII դ-ի սկզբի երաժշտարվ-ում: Հիմնադիրը՝ Ա. Վիլլարտ, ներկայացուցիչները՝ Կ. Մերուլո, Ա. և Ջ. Գաբրիելիներ: Գրել են մադրիգալներ, կանցոններ, երգեհոն. ոիչերկարներ, տոկկատաներ և այլ գործեր: 3. XVII դ.–XVIII դ-ի սկզբի օպեր. դպրոց: Ներկայացուցիչներից են Գ. Մոնտեվերդին, Ֆ. Կավալլին, Ա. Վիվալդին և ուր.:

ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սկզբնավորել է ***Հակոբ Մեղապարտը*** 1512-ին: 1565—66-ին ***Աբգար Թոխաթեցին*** հրատարակել է օրացույց և Սաղմոսարան, 1587-ին՝ ***Հովհաննես Տևրզնցին***՝ Սաղմոսարան: XVII դ-ում Վենետիկում հայ. գրքեր հիմնականում տպագրվել են իտալացիների կամ հույների տպարաններում 1642-ին Սաղմոսարան է լույս ընծայել ***Հովհաննես Անկյուրացին***, 1686–87-ին գրքեր են տպագրել Գասպար Սահրատյանը, ***Խոջա Նահապետ Գուլազարը***: XVIII դ-ի 2-րդ քառորդից իրենց տպագր. գործունեությունն են սկսել Մխիթարյանները, իսկ 1789-ին Սբ Ղազարում հիմնադրել են սեփական տպարան (մինչև XIX դ-ի կեսերը՝ 600 անուն գիրք): Տես նաև ***Մխիթարյան միաբանություն***:

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, հիմնադրվել է Սբ Ղազար կղզում՝ ***Մխիթար Սեբաստացու*** ջանքերով՝ նրա անձն. գրադարանի հիմքի վրա: Վ. մ-ում պահվում են ավելի քան 3400 հայկ. ձեռագիր մատյաններ, ինչպես նաև տպագիր հրտ-յուններ (շուրջ 40 հզ. միավոր, այդ թվում՝ հազվագյուտ հրտ-յուններ հայ., ֆրանս., հուն., իտալ., չին., հնդ. և այլ լեզուներով), պարբ. մամուլի հարուստ հավաքածու:

ՎԵՆԵՏԻԿՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ, XV դ-ի վերջ–XVI դ-ի սկզբին Լվովում հայատառ ղփչաղ-ով գրված պատմ. ժամանակագրություն: Բաղկացած է մոտ 200 գրառությունից, որոնք ընդգրկում են մ. թ. ա. I դ-ի կեսից մինչև 1536-ը: Կարևոր

սկզբնաղբյուր է Ուկրաինայի և Լեհաստանի հայկ. գաղթավայրերի կյանքի, նաև այդ և հարևան երկրների նշանակալի իրադարձությունների մասին: Պահպանվել է 2 խմբագրությամբ: Առաջին անգամ հրատարակել է Ղևոնդ *Ալիշանը* 1896-ին՝ *«Կամենից. Տարեգիրք Հայոց»* գրքում, թարգմանվել է հայ. և ֆրանս.:

ՎԵՆԵՏՆԵՐ (լատ.՝ Veneti), 1. հնագույն ցեղեր: Բնակվել են Ադրիատիկ ծովի հս. ափերին՝ Պո գետից հս-արլ.: Ըստ հնագիտ. տվյալների՝ Վ. այստեղ հայտնվել են մ. թ. ա. XII–XI դդ.-ում: Սկզբում զբաղեցրել են մերձալպ. հովիտները, այնուհետև տարածվել հվ-արլ.: 2. «Վ.» են անվանվել նաև Ատլանտ. օվկ-ի ափերին բնակված կելտ. ցեղերը, որոնց մ. թ. ա. 58–51-ի գալիական արշավանքների ժամանակ նվաճել է Հուլիոս Կեսարը: 3. Վ. (վենեդներ) է անվանվել սլավոն. ցեղերի արմ. ճյուղը: Հիշատակվում են մ. թ. I դ.-ից: Բնակվել են Վիսլա գետի ափերին և Բալթիկ ծովի առափնյա շրջաններում, իսկ ըստ Պտոլոմեոսի քարտեզի՝ Կարպատներից հս և Ստորին Դանուբի մերձակայքում:

ՎԵՆԵՐԱ (Venus), գարնան և այգիների աստվածուհին հռոմ. դից-յան մեջ: Հետագայում նույնացվել է հուն. *Աֆրոդիտեի* հետ ու համարվել սիրո և գեղեցկության աստվածուհի:

ՎԵՆԵՐԱ (աստղագիտ. նշանը՝ ♀), հայկ. անվանումը՝ Արուսյակ: Հայտնի էր նաև Վաղորդյան աստղ, Աստղիկ, Գիշերավոր, Ելաստղ և այլ անուններով: Արեգակն. համակարգի՝ ըստ Արեգակից ունեցած հեռ-յան՝ 2-րդ և *Երկրին* ամենամոտ մոլորակն է: Միջին հեռ.՝ Արեգակից 0,72 *ա. մ.* է: Պտտման պարբերությունն իր առանցքի շուրջը՝ 243 երկր. օր, Արեգակի շուրջը՝ 224,7 երկր. օր: Միջին հասարակած. շառավիղը 6051 *կմ* է, զանգվածը՝ $4{,}9 \cdot 10^{24}$ *կգ*: Մթն-ը՝ CO_2 (մոտ 96 %), N_2 (մոտ 4 %), H_2O (մոտ 0,05 %), կան խառնուրդներ՝ CO, SO_2, HCl, HF: Ջերմաստիճանը մակերևույթին՝ մոտ 740 K, ճնշումը՝ մոտ 10^7 *Պա*: Մակերևույթի վրա հայտնաբերել են լեռներ և խառնարաններ: Վ.-ի մակերևութ. ապարները կազմությամբ մոտ են երկրի բազալտ. ապարներին:

«ՎԵՆԵՐԱ», *Վեներա* մոլորակի և տիեզ. տարածության ուսումնասիրման համար ԽՍՀՄ-ում ստեղծված միջմոլորակ. տիեզ. սարքերի սերիա և նրանց մշակման ու արձակման ծրագրի անվանումը: Մեկնարկ. առլգն զանգվածը՝ մոտ 5 *կտ*: Առաջին մեկնարկը՝ 1961-ին. «Վ.-4»-ն առաջինն է ուղղակիորեն հետազոտել Վեներայի մթն-ը (1967), «Վ.-7»-ն առաջինն է փափուկ վայրէջք կատարել Վեներայի վրա (1970), «Վ.-9»-ը կատարել է Վեներայի մակերևույթի առաջին նկարահանումները (1975): 1961–83-ին արձակվել են 16 «Վ.» տիեզ. սարքեր:

ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, հիմնականում սեռ. ճանապարհով փոխանցվող վարակիչ հիվանդություններ (գոնոռեա, սիֆիլիս, փափուկ շանկր, աճուկ. լիմֆոգրանուլեմատոզ ևն): Արտասեռ. վարակումը (համբույրի, ընդհ. սպասքի, սպիտակեղենի միջոցով) հազվադեպ է: Վ. հ-ով զբաղվում է վեներաբանությունը:

ՎԵՆԵՑԻԱՆՈՎ Ալեքսեյ Գավրիլովիչ (1780–1847), ռուս. գեղանկարիչ: Կենցաղ. ժանրի հիմնադիրներից ռուս. գեղանկարչության մեջ: Ստեղծել է գեղջկ. կյանքի բանաստեղծ. կերպարներ, կենցաղ. տեսարաններ («Վարելահողում», 1820-ական թթ., «Ձախարկան», 1825), նուրբ գույներով պատկերել է ռուս. բնության գեղեցկությունը: Վ.-ի «Սուրհանդակ» (1809), «Գեղջկուհի», «Ա. Ա. Վորոնովի դիմանկարը» գործերը ՀԱՊ-ում են:

ՎԵՆԻԶԵԼՈՍ (Venizelos) Էլեֆտերիոս (1864–1936), հույն պետ. և քաղ. գործիչ: Կրետեի ազգ-ազատագր. շարժման ղեկ.: 1910-ին հիմնադրել է Հունաստանի բուրժուալիբերալ. կուս-յունը: Հունաստանի վարչապետ՝ 1910–15, 1917–20, 1924-ի հունվ–փետր-ին, 1928–32 և 1933-ին: Բալկանյան դաշինքի ստեղծողներից: Բալկանյան պատերազմների շնորհիվ կարողացել է Հունաստանին վերամիավորել Կրետեն, Հվ. Մակեդոնիան, Արմ. Թրակիան և հուն. այլ մարզեր: 1917-ի հունվ-ին պատերազմ է հայտարարել Եռյակ դաշինքին, 1919-ին սկսել է *Հույն-թուրքական պատերազմները* (1919–22): Դատապարտվել է աքսորի, սակայն փախել է արտերկիր և մահացել Փարիզում:

ՎԵՆՅԱՎՍԿԻ (Winiawski) Հենրիկ (1835–1880), լեհ ջութակահար, կոմպոզիտոր: Հարստացրել է ջութակի երկացանկը ժանր. պիեսներով և էտյուդներով: Հեղինակ է կոնցերտների (1853, 1870), «Սկերցո-տարանտելլայի» (1855), մազուրկաների, պոլոնեզների՝ ջութակի և նվագախմբի համար, և այլ գործերի: Անցկացվում է Վ.-ի անվ. միջազգ. մրցույթ (1935-ից՝ Վարշավայում, 1952-ից՝ Պոզնանում):

ՎԵՆՆ (Venn) Ջոն (1834–1923), բրիտանացի տրամաբան: Մշակել է դիագրամների գրաֆիկ. սարք (կոչվում է իր անունով), որը պատկերավոր կերպով ներկայացնում է հարաբերությունները բուլյան հանրահաշվի դասերի (հասկացությունների ծավալներ) միջև:

ՎԵՆՅԼՈՎԱ (Venclova) Անտանաս (1906–1971), լիտվացի գրող: Լիտվ. ԽՍՀ ժող. գրող (1965): Հեղինակ է «Հայրենիքի կանչը» (1943), «Հաղթնտիր» (1951) բանաստեղծությունների ժող-ների, «Գիշեր» (1939) հակաֆաշիստ. թեմաներով պատմվածքների ժող-ի, Լիտվայում 1940-ին խորհրդ. իշխանության հաստատման մասին «Ծննդյան օր» (1959, Լիտվ. ԽՍՀ Պետ. մրց.՝ 1960) վեպի, ինքնակենսագր. եռերգության (1964–69):

ԽՍՀՄ Պետ. մրց. (1952):

ՎԵՆՈՒՈԼԻՍ (Vienuolis, Ժուկաուսկաս) Անտանաս (1882–1957), լիտվացի գրող: Լիտվ. ԽՍՀ ժող. գրող (1957): Հեղինակ է «Քառուղիներ» (1932) պատմ., «Պուոջյունասների դաստակերտը» (1949) և այլ վեպերի, «Իմ հիշողություններից» (1957) հուշագրության, նաև վիպակների, պատմվածքների, պիեսների: Հայ. հրատարակվել է «Վերջին հանգրվան» (1973) ժող-ը:

ՎԵՉԵ, ընդհ. կարևորագույն հարցեր քննարկելու ժողով հին և միջնադար. Ռուսիայում: Վ.-ին էր պատկանում պատերազմի և հաշտության, իշխանների հրավիրման ու հեռացման, վարչ., դատ. և ռազմ. վարչության բարձրագույն ներկայացուցիչների ընտրության, տարբեր իշխանությունների և երկրների հետ հարաբերություններ հաստատելու, պայմանագրեր կնքելու, օրենքներ ընդունելու իրավունքը ևն:

ՎԵՊ, գեղ. գրկ-յան էպիկ. ժանր: Սովորաբար ընդգրկում է մեծ ժամանակահատված, ունի բազմաթիվ հերոսներ և սյուժետ. մի շարք գծեր, հանգամանորեն, վերլուծաբար ներկայացնում է կյանքը, բնավորությունների զարգացումը, միջավայրն ու կենցաղը, կարող է պարունակել հրապարակախոս. կամ փիլ. դատողություններ, քնար. շեղումներ, պատմ., ազգագր. տեղեկություններ, ուժեղ դրամատիզմ ևն (Լ. Ն. Տոլստոյ, «Աննա Կարենինա», Ռ. Ռոլան, «Ժան Քրիստոֆ», Շիրվանզադե, «Քաոս», Րաֆֆի, «Կայծեր», Ե. Չարենց, «Երկիր Նաիրի», ևն): Բնութագրվում և առանձնանում է ըստ թեմատիկայի՝ սիրային, ընտանեկան-կենցաղ., պատմ., փիլ., սոցիալ-քաղ., կենսագր., ֆանտաստիկ ևն, ըստ ծավալի՝ Վ.-էպոպեա, Վ. եռերգություն, վիպաշարեր ևն (Բալզակ, «Մարդկային կատակերգություն», Է. Զոլա, «Ռուգոն-Մակարներ», ևն), ըստ կառուցվածքի (արձակ, չափածո):

Արևմտաեվրոպ. գրկ-յան մեջ XVIII դ.-ում Վ.-եր ստեղծվել են հիմնականում սոցիալ-կենցաղ., հոգեբ., պատմ., 1830-ական թթ-ին՝ սոցիալ-հոգեբ. թեմաներով: XIX դ.-ում հայտնի անուններ էին Ստենդալը, Օ. դը Բալզակը, Չ. Դիքենսը, Ու. Թեքերեյը, Գ. Ֆլոբերը, Վ. Հյուգոն, Լ. Ն. Տոլստոյը, Ֆ. Մ. Դոստոևսկին և ուր., XX դ.-ում՝ Ռ. Ռոլանը, Թ. Մանը, Մ. Պրուստը, Ֆ. Կաֆկան, Զ. Զոյսը, Զ. Գոլսուորսին, Ու. Ֆոլքները, Է. Հեմինգուեյը, Գ. Գարսիա-Մարկեսը, Վ. Վ. Նաբոկովը, Մ. Ա. Շոլոխովը, Ա. Ի. Սոլժենիցինը և ուր.:

Հայ հին գրկ-յան մեջ «Վ.» հասկացությունն օգտագործվել է «երգք վիպասանաց» (Մովսես Խորենացի), «երգք վիպասանութեան» (Փավստոս Բուզանդ) և այլ ձևերով: Հայ նոր գրկ-յան մեջ Վ.-ի հիմնադիրը Խաչատուր *Աբովյանն* է («Վերք Հայաստանի»): Անվանի հայ վիպասաններից են Րաֆֆին, Ծերենցը, Պ. Պռոշյանը, Մուրացանը, Նար-Դոսը, Շիրվանզադեն, Դ. Դեմիրճյանը, Ս. Զորյանը, Գ. Մահարին, Գ. Սևունցը, Ս. Խանզադյանը և ուր.:

ՎԵՌԼԵՆ (Verlaine) Պոլ (1844–1896), ֆրանսիացի բանաստեղծ: Սիմվոլիզմի հիմնադիրներից: Պոեզիան հարստացրել է զգացմունքայնությամբ, նուրբ քնարականությամբ, հաղորդել երաժշտ. ցայտուն արտահայտչականություն: Հեղինակ է «Նրբակիրթ տոնախմբություններ» (1869), «Մաքուր սիրո երգը» (1870), «Ռոմանսներ առանց խոսքերի» (1874), «Հեռուն ու մոտիկը» (1884) և այլ ժող-ների, «Անիծյալ բանաստեղծներ» (1884) գրքննադատ. հոդվածների ժող-ի, «Խոստովանություն» (1895) ինքնակենսագր. երկի: Վ.-ի բանաստեղծություններից զետեղվել են «Ծաղկաքաղ ֆրանսիական դասական քնարերգության» (հայ., 1976) ժող-ում, առանձին հրատարակվել է «Ընտիր բանաստեղծություններ» (1995) ժող-ը:

ՎԵՌՆ (Verne) Ժյուլ Գաբրիել (1828–1905), ֆրանսիացի գրող: Արկած. վեպի հիմնադիրներից: Հեղինակ է «Ճանապարհորդություն դեպի երկրի կենտրոնը» (1864), «Երկրից դեպի լուսին» (1865), «Նավապետ Գրանտի զավակները» (1867–68), «20 000 մղոն ջրի տակ» (1869), «Հինգ շաբաթ օդապարիկով» (1869), «Աշխարհի շուրջը 80 օրում» (1872), «Խորհրդավոր կղզին» (1875), «Տասնհինգամյա նավապետը» (1878) և այլ գիտաֆանտաստիկ, արկած. և սոցիալ-երգիծ. վեպերի, վիպակների, պատմվածքների: «Բեգումի

500 միլիոնը» (1879), «Ուղղությունը՝ դեպի դրոշը» (1896), «Աշխարհի տիրակալը» (1904) և այլ վեպերում ստեղծել է համաշխ. տիրապետության ձգտող կամ գիտ–յունը հանցավոր նպատակների համար օգտագործող գիտնականների կերպարներ: Վ–ի գրեթե բոլոր գործերը թարգմանվել են հայ.:

ՎԵՌՆԱԴՍԿԻ Վլադիմիր Իվանովիչ (1863–1945), ռուս. բնախույզ, հանքաբան, բյուրեղագետ, երկրաքիմիկոս: Երկրի մասին ժամանակակից գիտ–յունների՝ երկրաքիմիայի, կենսաերկրաքիմիա–յի, ռադիոերկրբ–յան, հիդրոերկրբ–յան հիմնադիրը: Ս. Պետերբուրգի ԳԱ (1912), ՌԳԱ (1917), ԽՍՀՄ ԳԱ (1925–ից) ակադ., Ուկր. ԽՍՀ ԳԱ առաջին նախագահը (1925–ից): Նրա բն. գիտ. և փիլ. հետաքրքրությունների կենտրոնում կենսոլորտի, կենդանի նյութի (Երկրի թաղանթը կազմող) և կենսոլորտի նոոսֆերայի էվոլյուցիոն վերափոխ. ամբողջ. տեսության մշակումն է, որտեղ զարգացման գլխ. գործոն են դառնում մարդկային բանականությունն ու գործունեությունը, գիտ. միտքը, որոնք բնության վրա ազդեցության իրենց ուժով համաչափելի են դառնում երկրբ. շարժընթացներին: Բնության և հաս–յան փոխկապակցվածության վերաբերյալ Վ–ու ուսմունքը մեծ ազդեցություն է գործել ժամանակակից էկոլոգ. գիտակցության կազմավորման վրա: Իր կազմակերպած Ռադիումային ինստ–ի (1922–23), կենսաերկրաքիմ. լաբորատորիայի (1928–ից, այժմ՝ ՌԳԱ Վ–ու անվ. երկրաքիմիայի և վերլուծ. քիմիայի ինստ.) տնօրեն: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943):

ՎԵՌՆԱԴՍԿՈՒ ԼԵՌՆԵՐ, ենթասառցային լեռներ Արլ. Անտարկտիդայում՝ Մոդ Թագուհու Երկրի արլ–ում: Երկ.՝ շուրջ 400 *կմ*, բարձր.՝ ավելի քան 1600 *մ*: Սառցաշերտի հաստ. լեռների վրա՝ շուրջ 1000 *մ*: Հայտնագործել է խորհրդ. արշավախումբը 1964–ին և կոչել Վ. .Ի. *Վեռնադսկու* անունով:

ՎԵՌՆԵՐ Ալֆրեդ (1866–1919), շվեյցարացի քիմիկոս–անօրգանիկ, կոմպլեքս. միացությունների քիմիայի հիմնադիրներից, կոորդինացիոն տեսության հեղինակը: Նոբելյան մրց. (1913):

ՎԵՌՆԻԿՈՎ Յակով Իլյիչ (1920–1993), ռուս. փորձարկող օդաչու (1960): ԽՍՀՄ ավիացիայի գեն–մայոր (1971): ԽՄ հերոս (1944): Փորձարկել է ռեակտիվ կործանիչները պտտէջքում, ծանր ինքնաթիռները՝ թռիչքի կրիտիկ. ռեժիմում: Հորիզոն. թռիչքում առաջինն է հասել գերձայն. արագության:

ՎԵՌՆՈՅ Անրի (Մալաքյան Աշոտ Հակոբի, 1920–2002), կինոռեժ., գրող: Ֆրանսիայի գրկ–յան և գեղարվ–ի ակադ–ի անդամ (2000): 1948–ից ճանաչված դերասաններ (Ժ. Գաբեն, Օ. Շարիֆ, Կ. Կարդինալե և ուր.) մասնակցությամբ ստեղծել է 50–ից ավելի կինոնկարներ («Արգելված պտուղ», 1952, «Մաքսիմ», 1956, «Եվ ինչպես... Իկարը», 1978, «Մայրիկ», 1991, «Սեզան» մրց.՝ 1996, ևն): Հեղինակ է «Մայրիկ» (հայ. հրտ.՝ 1989) ինքնակենսագր. վեպի:

«Ոսկե ծիրան» կփ–ի «Փարաջանովի թալեր» մրց. (2010), ՀԱԵ «Սր Գրիգոր Լուսավորիչ» (1980), Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» (1995) շքանշաններ:

ՎԵՌՆՈՎ Սերգեյ Նիկոլաևիչ (1910–1982), ռուս ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1968): Սոց. աշխ. հերոս (1980): Աշխ–ները վերաբերում են տիեզ. ճառագայթների ուսումնասիրմանը: Հայտնաբերել է (1958, Ա. *Չուդակովի* հետ) Երկրի արտաքին ճառագայթ. գոտին: ԽՍՀՄ Պետ. (1949), Լենինյան (1960) մրց–ներ:

ՎԵՌՈԿՔԻՈ (Verrocchio, Անդրեա դի Միքելե Չոնի) Անդրեա դել (1435–1488), Վաղ Վերածննդի շրջանի *Ֆլորենցիայի դպրոցի* իտալացի քանդ., գեղանկարիչ, ոսկերիչ: Կատարման վերլուծ. ճշգրտությունն ու ձևերի մանրազննությունը զուգորդել է հղկված մանրամասների հետ («Դավիդ», արձան, մոտ 1462–65, կոնդոտիեր Կոլլեոնիի հուշարձանը, Վենետիկ, մոտ 1479–92, «Քրիստոսի մկրտությունը», նկար, 1460–ական թթ–ի վերջ–մոտ 1476, Լեոնարդո դա Վինչիի հետ):

ՎԵՍԵԼՈՎՍԿԻ Յուրի Ալեքսեևիչ (1872–1919), ռուս գրականագետ, բանաստեղծ, թարգմանիչ, հայագետ: Հեղինակ է հայ թատրոնին նվիրված հոդվածների («Պետրոս Ադամյան», 1891, «Հայ դրամայի ինագույն շրջանը», 1892, «Հայ բեմի պատմությունից, Թիֆլիսի թատրոնն ու կենցաղային կատակերգությունը», 1892, ևն), Հայաստանին և հայ ժողդ–ին նվիրված բանաստեղծությունների («Հայերին», «Հայ ժողովրդին», «Գիշերը Ավարայրի դաշտում...» ևն): 1893–94–ին հրատարակել է «Հայ գրողներ» (Մինաս *Բերբերյանի* հետ) երկհատոր ժող–ը, 1907–ին՝ հայ նոր պոեզիայի առաջին՝ «Հայկական մուսա» (խմբ.՝ Գրիգոր Խալաթյանց) անթոլոգիան: 1915–ին դատապարտել է Հայոց ցեղասպանությունը՝ հրատարակելով «Թուրքահայաստանի ողբերգությունը» գրքույկը, «Տառապող երեխաներ», «Հայերի ճակատագիրը և ռուս ազող սերունդը» և այլ հոդվածներ: Հեղինակ է «Հերոսական դարաշրջանի գրական գործիչ Եղիշե Վարդապետը» (1901), «Հայ բանաստեղծ Սմբատ Շահազիզը» (1902), «Ակնարկներ հայ գրականության և կյանքի» (1906), «Ռուսական ազդեցությունը ժամանակակից հայ գրականության վրա» (1909) աշխ–ների: Վ–ու «Բանաստեղծական թարգմանություններ» (1898) ժող–ում տեղ են գտել նաև նմուշներ հայ պոեզիայից:

ՎԵՍՊԱՍԻԱՆՈՍ Տիտոս Փլավիոս (Titus Flavius Vespasianus, 9–79), Հռոմի կայսր՝ 69–ից: Փլավիոսների հարստության հիմնադիրը: Մինչև 69–ը ճնշել է Հուդայում բռնկած հակահռոմ. շարժումը: Մտցրել է նոր հարկեր, կրճատել բանակը: Արլ–ում ամրացրել է կայսրության սահմանը Հայաստանի և Պարթևաստանի հետ: 72–ին Կոմմագենեն և Փոքր Հայքը կցել է կայսրությանը:

ՎԵՍՊԵՐ (Դարաղյան Մարտիրոս Տիգրանի, 1893–1977), բանաստեղծ, թարգմանիչ: ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1967): Հեղինակ է «Պայծառություն» (1936), «Եղևնի» (1939), «Մայիսյան վարդեր» (1941), «Հիշատակ» (1948), «Առաջին աշուն» (1956), «Շուշանի շափրակներ» (1968) և այլ բանաստեղծությունների, «Արձակ էջեր» (1963) ժող–ների, նաև մանկ. գործերի:

ՎԵՍՊՈՒՉԻ (Vespucci) Ամերիգո (1451–ի և 1454–ի միջև–1512), իտալացի ծովագնաց: Մասնակցել է մի քանի արշավանքների դեպի Հվ. Ամերիկայի հս. ափերը (1499–1504): Քարտեզագիր Մ. Վալդեմյուլլերը Հվ. Ամերիկայի երկրների՝ Ք. Կոլումբոսի հայտնագործությունը վերագրել է Վ–ին և, ի պատիվ նրա, առաջարկել այդ մայրցամաքն անվանել Ամերիկա: 1538–ին Մերկատորն իր քարտեզի վրա առաջին անգամ այդ անվանումը տարածել է նաև Հս. Ամերիկայի վրա:

ՎԵՍՍ ՍԱՐԳԻՍ, Սարգիս Հայկազն, XI դ–ի իշխան, քաղ. գործիչ: *Հովհաննես Սմբատ* թագավորի խնամակալը: Հովհաննես Սմբատի մահից (1041) հետո հափշտակել է արքայական գանձարանը: *Գագիկ Բ* թագավորը ձերբակալել է նրան, բայց հետո ներում է շնորհել: Գործակցել է *Պետրոս Ա. Գետադարձի* և Կոստանդին Մոնոմախ կայսրի հետ, վերջինիս գաղտնի հղել հպատակության թուղթ: Հայկ. աղբյուրներում Վ. Ս. համարվում է հայկ. պետականության կործանման գլխ. հանցակից:

ՎԵՍՏԱ, (Vesta), տան սրբազան կրակարանի և ընտանեկան կյանքի մաքրության աստվածուհին հռոմ. դից–յան մեջ: Համապատասխանում է հուն. Հեստիային:

ՎԵՍՏԱ, փոքր մոլորակների գլխ. գոտու խոշորագույն մոլորակը: Տրամագիծը՝ 537 *կմ*, ուղեծրի մեծ կիսաառանցքը՝ 2,37 *ա. մ*, պտտման պարբերությունը՝ 3,6 տարի:

ՎԵՍՏԱԼՈՒՀԻՆԵՐ (լատ.՝ Vestales), *Վեստա* աստվածուհու տաճարն սպասարկող քրմուհիներ Հին Հռոմում: Վ. պարտավոր էին անշեջ պահել սրբազան կրակը: Ընտրվել են անվանի ընտանիքների դուստրերից, որոնք պետք է ծառայեին աստվածուհուն: 30 տարին լրանալուց հետո Վ. ստացել են ամուսնանալու իրավունք: Երդումը խախտող Վ–ին ողջ–ողջ թաղում էին:

ՎԵՍՏԳՈՒԹԵՐ, *վիզիգոթեր, տերվինգներ*, գերմ. ինագույն ցեղ, *գոթերի* արմ. ճյուղը: III–IV դդ–ում բնակվել են Դնեստր գետից հս: 370–ական թթ–ից մասնակցել են *ժողովուրդների մեծ գաղթին*: 418–ին Հվ. Գալլիայում հիմնադրել են 1–ին բարբարոս. թագավորությունն Արմ. Հռոմ. կայսրության տարածքում՝ Թուլուզ կենտրոնով: V դ–ի 2–րդ կեսին նվաճել են Իսպանիայի մեծ մասը, որը Հվ. Գալլիայի կորստից (507) հետո դարձել է Վ–ի թագավորության հիմն. տարածքը: 711–718–ին Վ–ի թագավորությունը նվաճել են արաբները:

ՎԵՍՏՄԻՆՍՏԵՐ, *Ուեստմինստեր* (Westminster – բառացի՝ արմ. վանք), Լոնդոնի պատմ. շրջաններից, Թեմզայի ձախ ափին՝ Սիթիից արմ., Լոնդոնի կոմսության համանուն մայրաքաղաք. շրջանի մասը: Վ–ում են Մեծ Բրիտանիայի կառավար. գլխ. հիմնարկները՝ խորհրդարանը (Վեստմինստերյան պալատ) և նախ–յունները, վարչապետի նստավայրը, Բուքինգհեմյան պալատը՝ թագավորների նստավայրը, Վեստմինստերյան տաճարը:

ՎԵՍՏՄԻՆՍՏԵՐՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ, բարձրագույն դատարանների (Թագավոր. աթոռի դատարան, Ընդհ. գործերի դատարան, Գանձարանի դատարան) ընդհ. անվանումը միջնադար. Անգլիայում: Այդպես է անվանվել XII դ–ի վերջից: Վ. դ. ընդհ. իրավունքի հիման վրա քննում էին Անգլիայի շահերը շոշափող առավել կարևոր գործերը: Մեծ Բրիտանիայի դատարանակազմության ակտերով (1873–75) Վ. դ. միաձուլվել են կանցլերի դատարանի հետ:

ՎԵՍՏՄԻՆՍՏԵՐՅԱՆ ՍՏԱՏՈՒՏ 1931, անգլ. խորհրդարանի ակտը (1931–ի

դեկտ. 11-ին), որով սահմանվել են դոմինիոնների իրավ. դրությունն ու փոխհարաբերությունները Մեծ Բրիտանիայի հետ: Իրավաբ. ուժ է տվել ներքին ու արտաքին գործերում դոմինիոնների ինքնուրույնության և Մեծ Բրիտանիայի հետ նրանց իրավահավասարության մասին՝ 1926 և 1930-ի կայսեր. խորհրդաժողովների որոշումներին:

«ՎԵՍՏՆԻԿ» («Вестник Союза армян России» – «ՌՀՄ-ի լրատու»), ՌՀՄ ամենամյա տեղեկագիր (2002-ից, Մոսկվա):

«ՎԵՍՏՆԻԿ ԵՎՐՈՊԻ» («Вестник Европы» – «Եվրոպայի լրատու»), 1. հաս-քաղ., գր. կիսամյա հանդես (1802–30, Մոսկվա): Հիմնադիր՝ Ն. Մ. Կարամզին: 2. Գր-քաղ. ամսագիր (1866–1918, Ս. Պետերբուրգ): Պահպանող. ուղղվածության:

«ՎԵՍՏՆԻԿ ՌԱԱՌ» («Вестник РАУ» – «ՀՌՀ-ի լրատու»), գիտ. քառամսյա/կիսամյա հանդես, Հայ-ռուս. (Սլավոն.) համալսարանի հրտ-յուն [Երևանում՝ ռուս., մասնագիտ. 2 պրակով՝ հումանիտար և հաս. գիտ-յուններ՝ 2003-ից (գլխ. խմբ-ներ՝ Կառլեն Միրումյան, Արմեն Դարբինյան՝ 2013-ից), ֆիզմաթ. և բնական գիտ-յուններ՝ 2005-ից (գլխ. խմբ.՝ Սերգեյ Համբարձումյան)]:

ՎԵՍՏՖԱԼԻՅԱՆ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ 1648, կնքվել է *Երևանյա պատերազմից* հետո: Միավորել է 1648-ի հոկտ. 24-ին կնքված Օսնաբրյուկի և Մյունստերի հաշտության պայմանագրերը: Շվեդիային են անցել Բալթիկ և Հս. ծովերի կարևորագույն նվինգատ-ները: Ֆրանսիան իրեն է միացրել լոթարինգյան Մեց, Տուլ և Վերդեն եպիսկոպոսությունները և ողջ Էլզասը (առանց Ստրասբուրգի): Գերմ. իշխանները լիակատար անկախություն են ստացել ներքին և արտաքին քաղ-յան բնագավառում, որի հետևանքով խորացել է Գերմանիայի քաղ. մասնատվածությունը:

ՎԵՏՈ (լատ.՝ veto – արգելել), 1. Հին Հռոմում հռոմ. մագիստրատի՝ մյուս մագիստրատների որոշումների վրա արգելք դնելու իրավունքը: Որոշ պետություններում Վ. օրենսդիր մարմնի ընդունած օրինագիծը գործողության մեջ մտցնելուց հրաժարվելու պետության ղեկ-ի իրավունքն է: 2. Միջազգ. իրավունքում Վ. է համարվում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտ. անդամների միաձայնության սկզբունքը ոչ սրարողակարգային հարցերի վերաբերյալ որոշում կայացնելիս:

ՎԵՏՉԻՆԿԻՆ Վլադիմիր Պետրովիչ (1888–1950), ռուս մեխանիկոս: Մոսկվայի Կենտր. աերոդինամիկ. ինստ-ի կազմակերպիչներից: Աշխ-ները վերաբերում են թիապտուտակներին, ինքնաթիռի և հրթիռի թռիչքի դինամիկային, հողմաէներգետիկային: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943):

ՎԵՐԱԴՐՄԱՆ ՄԿԱԶԲՈՒՆՔ, 1. **դասական ֆիզիկայում**, ենթադրություն, ըստ որի՝ մի քանի անկախ ազդեցությունների արդյունարար էֆեկտը յուրաքանչյուր առանձին ազդեցության առաջացրած էֆեկտների գումարն է: Ճշմարտացի է գծային հավասարումներով նկարագրվող համակարգերի կամ դաշտերի համար: 2. **Քվանտային մեխանիկայում**, Վ. ս. վերաբերում է ***ալիքային ֆունկցիային***: Եթե ֆիզ. համակարգի վիճակները կարող են նկարագրվել 2 (կամ ավելի) ալիք. ֆունկցիաներով, ապա այն կարող է գտնվել այդ ֆունկցիաների ցանկացած գծային համակցություններով նկարագրվող վիճակում (վիճակի վերադրման սկզբունք):

ՎԵՐԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐ, միջազգ. ընկ-ներ, ինչպես նաև արտադր-յան ակտիվներով ազգ. տրեստներ ու կոնցեռններ: Լայն տարածում են ստացել ԵՀՊ-ից հետո: Վերահսկում են արտադր-յան բազմաթիվ ճյուղեր ու համաշխ. տնտ-յան ոլորտներ, տնօրինում արդ. արտադր-յան, արտաքին առևտրի, նոր տեխնիկայի ու տեխնոլոգիայի արտոնագրերի զգալի մասը:

«ՎԵՐԱԾՆՈՒՆԹԻՒՆ», հաս., տես-վերլուծ., գր. ամսաթերթ (1918–20, Բոստոն): Հնչակյան կուս-յան Ամերիկայի շրջանի պաշտոնաթերթ: Խմբ-ներ՝ Եղիա Սիրվարդ, Հ. Բարեջանյան:

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ, մշակույթի և գաղ. զարգացման ժամանակաշրջան Արմ. և Կենտր. Եվրոպայի երկրներում (Իտալիայում՝ XIV–XVII դդ., այլ երկրներում՝ XV դ-ի վերջ–XVI դ.), անցում միջնադար. մշակույթից նոր ժամանակի մշակույթին: Վ-ի մշակույթին բնորոշ են աշխարհիկ բնույթը, հումանիստ. աշխարհայացքը, անդրադարձը («վերածնումը») անտիկ մշակույթին: Զևավորվել և առավել վառ դրսևորվել է Իտալիայում, որտեղ XIII–XIV դդ-ի սահմանագլխին այն կանխորոշել են Ա. Դանտեն և Ջոտտոն: Իտալիայում ճարտ-յան և արվ-ի մեջ տարբերում են Վ-ի Վաղ (XV դ.), Բարձր (XV դ-ի վերջ–XVI դ-ի 1-ին քառորդ, Վենետիկում՝ մինչև 1540-ական թթ.) և Ուշ (1520-ական թթից մինչև XVI դ-ի վերջը) փուլերը: Ճարտարապետության մեջ կարևորվել են աշխարհիկ կառույցները (հաս. շենքերը, պալատները, քաղաք. տները): Պատերի օրդեր. գմբեթները և այլ տարրեր (Ֆ. Բրունելլեսկին, Լ. Բ. Ալբերտին, Դ. Բրամանտեն, Ա. Պալլադիոն՝ Իտալիայում, Պ. Լեսկոն, Ֆ. Դելորմը՝ Ֆրանսիայում) կառույցներին հաղորդել են հանդիսավորություն: Գեղանկարիչները [Դոնատելլո, Մազաչչո, Լ. դա Վինչի, Ռաֆայել, Միքելանջելո, Տիցիան, Պ. Վերոնեզե, Յ. Տինտորետտո (Իտալիա), Յան վան Էյք, Պ. Բրեյգել Ավագ (Նիդեռլանդներ), Ա. Դյուրեր, Մ. Գրյունեվալդ, Հ. Հոլբայն Կրտսեր (Գերմանիա), Ժ. Ֆուկե, Ժ. Գուժոն, Ժ. Կլուե Կրտսեր (Ֆրանսիա)] իրենց գործերում արտացոլել են բնության ողջ հարստությունը (տարածությունը, ծավալը, լույսը, նաև պատկերել մարդկանց ֆիգուրները, այդ թվում՝ մերկ մարմիններ, նաև): **Երաժշտության մեջ** զարգացել է վոկալ և գործիք. պոլիֆոնիան, երևան են եկել նոր ժանրեր (մեներգ, կանտատ, օրատորիա, օպերա)՝ ամրապնդելով հոմոֆոնիայի դերը: **Գրականության մեջ** հիմն. փուլերն ու ժանրերը պայմանավորված են հումանիզմի դրսևորումներով: Բնորոշ են նովելը (Ջ. Բոկաչչո, Ֆ. Սակետտի, Մ. Նավառացի, Մ. Բանդելլո և ուր.), ապա՝ ժող. վեպը, հովվերգ. դրամաները, սիր. քնարերգությունը, բարոյագիտ. և քաղ. տրակտատները (Ֆ. Ռաբլեի «Գարգանտյուա և Պանտագրյուելը», Վ. Շեքսպիրի դրամաները, Մ. Սերվանտեսի «Դոն Կիխոտը», Ֆ. Պետրարկայի սոնետները, Լ. Արիոստոյի և Տ. Տասսոյի պոեմները, Էրազմ Ռոտերդամցու «Գովք հիմարության»-ը, Մ. դե Մոնտենի էսսեները ևն): Վ-ի դարաշրջանում տարածվել են նորպլատոնականության (Մ. Ֆիչինո) և բնապաշտության (Ֆ. Պատրիսի, Ջ. Բրունո և ուր.) փիլ. գաղափարները, կատարվել հայտնագործություններ աշխարհագրության (Մեծ աշխարհագր. հայտնագործություններ), աստղագիտության (Ն. Կոպեռնիկոսի մշակած աշխարհի արեգակնակենտրոն համակարգը), անատոմիայի (Վեզալի) ոլորտներում:

«ՎԵՐԱԾՆՈՒՆԴ», գր., հաս-քաղ. պարբերաթերթ (1917–21, Փարիզ): Տնօրեն-խմբ.՝ Լևոն Համբարձումյան, խմբ.՝ Արշակ Չոպանյան:

«ՎԵՐԱԾՆՈՒՆԴ», հաս-քաղ., գր. պարբերաթերթ (1930–53, Թեհրան): Խմբ.՝ Հայկ Գարագաշ:

«ՎԵՐԱԾՆՈՒՆԴ», հաս-քաղ., գր. պարբերաթերթ (1937–40, Աթենք): Խմբ-ներ՝ Արամ Կեոքճյան, Սանուկ Դարբինյան:

«ՎԵՐԱԾՆՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ», գր-գեղ., հաս. ամսագիր (1945–91, Երևան, 1945–88-ին՝ «Սովետական Հայաստան», 1989–90-ին՝ «Վ. Հ.», 1991-ին՝ «Հայրենի եզերք»: Սփյուռքահայության հետ մշակութ. կապի կոմիտեի հրտ-յուն: Խմբ-ներ՝ Զաքար Բաշինջաղյան, Սուրեն Հարությունյան, Պատրիկ Սելյան, Հրաչյա Գրիգորյան, Աշոտ Թադևոսյան, Շահեն Թաթիկյան, Վահագն Դավթյան, Կարեն Սիմոնյան:

ՎԵՐԱԿԱԶՄՅԱԼ ՀՆՉԱԿՅԱՆՆԵՐ, հնչակյան կուս-յան աջ թևը: 1896-ին բաժանվել են հնչակյաններից, 1898-ի համագումարում (Ալեքսանդրիա) պաշտոնապես ընդունել «Վերակազմյալ հնչակյան կուսակցություն» անվանումը: Հիմնադիրներն էին Մ. Սվազլը, Ա. Արփիարյանը, Մ. Տամատյանը և ուր.: Իրենց խնդիրը հռչակելով Արմ. Հայաստանի ազատագրումը՝ Վ. հ. ժխտում էին սոցիալ. պայքարը, սոցիալիզմը համարում «ավելորդ և վնասակար հայոց դատի համար»:

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿ (ՎԶԵԲ, European Bank for Reconstruction and Development), Կենտր. և Արլ. Եվրոպայի ու ԱՊՀ երկրների երկարատև վարկավորման տարածաշրջ. միջպետ. բանկ: Հիմնադրվել է 1990-ին Փարիզում, գործարքներ կատարել 1991-ից: Կենտրոնատեղին՝ Լոնդոնում: ՀՀ-ն ՎԶԵԲ-ի անդամ է 1992-ից:


ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄ, **ռեանիմացիա** (< ***ռև***... և լատ.՝ animatio – կենդանացում), օրգանիզմի խիստ խանգարված կամ կորցրած կենս. կարևոր ֆունկցիաների վերականգնումը: Անցկացվում է ծայր. վիճակներում, այդ թվում՝ կլինիկ. մահվան դեպքում (շնչառության և արյան շրջանառության ընդհատման պահից սկսած՝ առաջին 4–6 *ր*-ում), ավելի ուշ ի հայտ են գալիս ԿՆՀ-ի անվերադարձ փոփոխություններ, և վրա է հասնում կլինիկ. մահը:

ՎԵՐԱՀԱՂՈՐԴԻՉ, սարք, արհեստ. միջավայր կամ երկն. մարմին, որն օգտագործում են որպես ռադիոկապի (ռադիոտեղորոշման, տիեզ. կապի) գծի միջանկյալ կայան: Ակտիվ Վ. ընդունող-հաղորդող ռադիոկայան է (ընդունում է ռադիոազդանշանը, ուժեղացնում և հաղորդում), պասսիվ Վ.՝ հարթ անդրադարձիչ, հայելային անտենա, մետաղի իոնացված գոլորշիների ամպ, կապի արբանյակ ևն: Դրանք ցրում են ռադիոալիքները կամ ուղղորդված անդրադարձնում:

ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ, պետ. իշխանության մարմին, որն իրականացնում է

բյուջետ. միջոցների վերահսկողություն, օտարերկրյա պետություններից և միջազգ. կազմ–յուններից ստացված փոխառությունների ու վարկերի, պետ. ու համայնք. սեփականության օգտագործման նկատմամբ: 1. ԼՂՀ Վ. պ. ստեղծվել է 2008–ին: Նախագահներ՝ Արկադի Սողոմոնյան, Էդվարդ Բարսեղյան, Արթուր Մոսիյան, Էռնեստ Ավանեսյան (2014–ից): 2 ՀՀ Վ. պ., հիմնադրվել է 1996–ին: Գործում է «Վերահսկիչ պալատի մասին» (2006) ՀՀ օրենքով: Նախագահներ՝ Իշխան Զաքարյան, Լևոն Յոլյան (2017–ից):

ՎԵՐԱՄԲԱՐՁ ՈՒԺ, ուժ, որով միջավայրն ազդում է իր մեջ շարժվող մարմնի վրա. ուղղահայաց է մարմնի շարժման արագությանը: Վ. ու. առաջանում է ոչ համաչափ մարմնի տարբեր մակերևույթների՝ միջավայրի կողմից տարբեր արագություններով շրջահոսման հետևանքով (օր.՝ ինքնաթիռի թևը օդի հոսքով շրջահոսելիս), տես նկ.:



Վերամբարձ ուժ. ինքնաթիռի թևի կտրվածքի (պրոֆիլի) շրջահոսումը. v – վերամբարձ ուժ, v – օդի հոսքի արագությունը, թևի տակի ճնշումը՝ Pա մեծ է թևի վրա եղած ճնշումից՝ P_վ:

ՎԵՐԱՄԲԱՐՁ–ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ, նախատեսված են մարդկանց ու բեռների բարձրացման և գործարանների, շին. հրապարակների, պահեստների նվինգստ–ների սահմաններում ոչ մեծ տարածություններ տեղափոխելու համար: Տարբերում են պարբեր. գործողության (բեռնամբարձիչ մեքենաներ), անընդհատ (փոխակրիչներ, էլևատորներ, շարժասանդուղքներ) Վ.–փ. մ., կախովի և վերերկրյա փոխադրամիջոցի սարքեր (ճոպանուղիներ), որոնք կարող են լինել ցիկլ. և անընդհատ գործողության:

ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, արտադր–յան ճյուղ. զբաղվում է արդ. և գղտ. հումքի մշակմամբ կամ վերամշակմամբ: Ընդգրկում է սև և գունավոր մետաղներ, քիմ. և նավթաքիմ. մթերքներ, մեքենաներ և սարքավորումներ, փայտամշակման ու թաղանթանյութի–թղթի արդ–յան իրեր, ցեմենտ ու շին. այլ նյութեր, թեթև ու սննդի արդ–յան արտադրանք թողարկող, արդ. իրեր նորոգող և այլ ձեռն–ներ:

ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ, նեղ իմաստով՝ սերնդափոխության գործընթաց բնական շարժի (ծննդի ու մահվան) արդյունքում, լայն իմաստով՝ բնակչության մշտ. վերականգնում՝ բնական շարժի, գաղթի, սոցիալ. մի խմբից այլ խմբի անցման հիման վրա:

ՎԵՐԱՓՈՒԽՈՒՄ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ, **Ննջումն Աստվածածնի**, ՀԱԵ 5 տաղավար տոներից: ***Սուրիամ Ասպվածածնի*** երկինք փոխադրվելու հիշատակի օրն է (օգոստ. 12–18–ը): Տոնն ունի շաբաթապահք, նավակատիք և մեռելոց: Զուգակցվել է հեթանոս. ժամանակներից ի վեր կատարվող խաղողի օրհնության ծեսին: Պատարագից հետո կատարվում է խաղողօրհնեք, որից հետո միայն կարելի է խաղող ուտել:

ՎԵՐԳԱ (Verga) Ջովաննի (1840–1922), իտալացի գրող: Վաղ շրջանի գործերն առավել հանրամատչելի են («Եվա», 1873, «Էրոս», 1875, վեպեր): Նովելներում վերիզմի դիրքերից պատկերել է իտալ. հաս–յան տարբեր շերտերը («Գեղջկական պատիվ», 1884, հայ.՝1897, 1964, համանուն օպերա՝ 1890, հեղինակ՝ Պ. Մասկանի, ևն): Հեղինակ է նաև «Նեդդա» (1874) վիպակի, «Մալավոլյայի ընտանիքը» (1881), «Վարպետ դոն Ջեզուալդոն» (1889) վեպերի ևն:

ՎԵՐԳԵԼԴ (գերմ.՝ Wergeld – մարդու գին), բարբարոս. օրենսգրքերով նախատեսված դրամ. հատուցում՝ ազատ մարդուն սպանելու համար: Ծագել է որպես արյան վրեժի երկընտրանք: Տարբեր ձևերով կիրառվել է մինչև XII–XIII դդ.: Համապատասխանում է հին և միջնադար. հայ իրավունքում օգտագործվող «արյան գին» (արնագին) հասկացությանը:

ՎԵՐԳԻԼԻՈՍ Մարո Պուբլիոս (Vergilius Maro Publius, մ. թ. ա. 70–19), հռոմեացի բանաստեղծ: Վաղ շրջանի ստեղծագործություններն ընդգրկված են «Բուկոլիկա» («Հովվական երգեր», մ. թ. ա. 42–38) ժողում: Հեղինակ է «Գեորգիկա» («Հողագործական բանաստեղծություններ», մ. թ. ա. 36–29) դիդակտիկ պոեմի, «Էնեական» հերոս. դյուցազնավեպի (հուն. էպոսի հռոմ. տարբերակը), որը հռոմ. դաս. պոեզիայի գագաթնակետն է:

ՎԵՐԳԵՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1916, մարտեր գերմ. և ֆրանս. զորքերի միջև Վերդենի ամրացված շրջանի համար փետր–դեկտ–ին: Գերմանիայի գերագույն հրամանատարությունը որոշել էր 1916–ին գլխ. հարվածը հասցնել Արմ. ճակատում՝ Վերդենի ելուստին (112 *կմ* երկ–յամբ): 70 օրվա ծանր մարտերից հետո գերմ. զորքերն առաջացել են ընդամենը 6–7 *կմ*: 1917–ի օգոստ. 20–26–ի հարձակման հետևանքով ֆրանս. զորքերը լիովին վերականգնել են նախկին դիրքերը Վերդենի մոտ: Գերմանիան կորցրել է շուրջ 600 հզ. մարդ, Ֆրանսիան՝ 358 հզ.: Վ. ճ. պատմության մեջ է մտել «Վերդենյան մսաղաց» անունով:

ՎԵՐԳԵՆԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 843, կնքվել է Վերդենում Կառլոս Մեծի թոռների՝ Լոթարի, Լյուդովիկոս Գերմանացու և Կառլոս Ճաղատի միջև՝ Կառլոս Մեծի կայսրությունը բաժանելու վերաբերյալ: Լոթարը պահպանել է կայսեր. տիտղոսը, ստացել Իտալիան և հողեր՝ Հռենոսի ու Ռոնի երկայնքով, Կառլոս Ճաղատը՝ Հռենոսից արմ. ընկած հողերը (Ֆրանսիայի տարածքը), Լյուդովիկոս Գերմանացին՝ Հռենոսից արլ. ընկած հողերը (Գերմանիայի տարածքը): Վ. պ–ով, փաստորեն, ստեղծվել են 3 մեծ պետություններ՝ Իտալիան, Ֆրանսիան և Գերմանիան:

ՎԵՐԴԻ (Թարվերդյան Գեղամ Գևորգի, 1884–1959), բանահավաք–աշուղագետ: Գրառել է ժող., բանահյուս. և աշուղ. երգեր, որոնց հիման վրա կազմվել են «Հայ աշուղներ» (1937), «Հայկական խորհրդային ֆոլկլորը» (1938), «Քյոռ–Օղլի» (1941), «Հանելուկներ» (1957), «Հեքիաթներ և զրույցներ» (1957) ժող–ները:

ՎԵՐԴԻ (Verdi) Ջուզեպպե (1813–1901), իտալացի կոմպոզիտոր: 1840–ական թթ–ի հերոս. օպերաներին հետևել են 1850–ական թթ–ի հոգեբ. դրամաները («Ռիգոլետտո», 1851, «Տրուբադուր», 1852, «Տրավիատա», 1853, «Պարահանդես–դիմակահանդես», 1859): 1860–ական թթ–ին մեծ օպերայի ավանդույթներով ստեղծել է մոնումենտալ–հերոս. դրամաներ («Ճակատագրի ուժը», «Դոն Կառլոս»): Օպեր. արվ–ի գլուխգործոցներից են «Աիդա»–ն (1870), «Օթելլո»–ն (1886), «Ֆալստաֆ»–ը (1892): Հեղինակ է նաև Ռեքվիեմի (1874) և այլ գործերի:

ՎԵՐԴԻԿՏ (լատ.՝ vere dictum – ճշմարիտ ասված), երդվյալների դատարանում ամբաստանյալին մեղավոր կամ անմեղ ճանաչելու՝ երդվյալ ատենակալների որոշումը (դատավճիռը): Լինում է մեղադր. կամ արդարացման, բանավոր կամ գրավոր:

ՎԵՐԴՅԱՆ Բոգդան Հակոբի (1919–1992), արձակագիր, լեզվաբան: Բանասիր. գիտ. դ–ր (1970), պրոֆ. (1973): Հեղինակ է «Ինչպես է գալիս երջանկությունը» (1958), «Լեռների որդին» (1962, ռուս.՝ 1965), «Ծաղիկներս մնացին հեռվում» (1969, 1990) և այլ վեպերի, «Այրվող ալիքներ» (1977), «Երկխոսություն» (1980), «Արտակարգ դեսպաններ» (1985) եռերգության, «Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն» (1970) աշխ–յան:

ՎԵՐԴՈՆԵ (Verdone) Մարիո Օրեստի (1917–2009), իտալացի գրող, կինոքննադատ–արվեստաբան, հայագետ–թարգմանիչ: Եղել է Հռոմի համալսարանին կից թատեր., երաժշտ. և կապի ինստ–ի տնօրեն: Ստեղծել է իտալ. կյանքին նվիրված վավերագր. կինոնկարներ: Հեղինակ է «Մարդու քաղաքը» (1941) բանաստեղծությունների ժող–ի, քննադատ. երկերի: «Ավանգարդիստական պոեզիա և կինոսցենարներ» (1975) աշխ–յան մեջ անդրադարձել է նաև Ե. Չարենցի «Մսուղեն ամուսիններ կամ ինքն իրեն կոմունիզմ» բալլադին, «Հայկական տաղերն իրենց իսկ գույնով» (1970) հոդվածում անդրադարձել է նրա ստեղծագործությանը և բարձր գնահատել այն: Հեղինակ է «Գրիգոր Նարեկացի» (1982) և հայ գրկ–յանն ու մշակույթին նվիրված այլ հոդվածների: 1968–ին Վ.–ի թարգմանությամբ և առաջաբանով լույս է տեսել Չարենցի բանաստեղծությունների ժող–ը: 1977–ին այցելել է Հայաստան:

«ՎԵՐԵԼՔ», գր., գեղ., գիտ., հաս. հանդես (1924–26, Երևան): ՀԿ(բ)Կ ԿԿ հրտ–յուն: Պատ. խմբ.՝ Եղիա Չուբար:

«ՎԵՐԵԼՔ», գր. հանդես (1933–34, Երևան): ՀԳՄ պաշտոնաթերթ: Պատ. խմբ.՝ Եղիա Չուբար, խմբագրակազմ՝ Վ. Ալազան, Ն. Դաբաղյան, Դ. Դեմիրճյան, Գ. Մահարի, Ե. Չարենց, Շիրվանզադե, Գ. Վանանդեցի:

ՎԵՐԵՇՉԱԳԻՆ Գևոր Յուրևիչ (1889–1944), ռուս. աշխարհագետ, ջրակենսաբան, ճահճաբան: Աշխ–ները վերաբերում են լճափերի սառցային ռեժիմին, դինամիկային և ձևաբանությանը, Բայկալի ջրակենսբ–յանը: Հեղինակ է Բայկալի ֆաունայի և ֆլորայի ծով. ծագման տեսության:

ՎԵՐԵՇՉԱԳԻՆ Գրիգորի Եգորովիչ (1851–1930), ռուս գրող, լուսավորիչ: Ուդմուրտ. գրկ–յան հիմնադիրը: Վ.–ի «Գորշակապույտ, գորշակապույտ աղավնյակ...» (1889) բանաստեղծությունը համարվում է ուդմուրտ. գր. առաջին ստեղծագործությունը:

ՎԵՐԵՇՉԱԳԻՆ Լևոն Ֆեդորովիչ (1909–1977), ռուս. ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1966): Սոց. աշխ. հերոս (1963): 1958–ից՝ ԽՍՀՄ ԳԱ բարձր ճնշումների ֆիզիկայի ինստ–ի (այժմ՝ Վ.–ի անվան) կազմակերպիչ և տնօրեն: Աշխ–ները վերաբերում են բարձր և գերբարձր ճնշումներում նյութերի հատկություններին և գերբարձր ճնշումների ստացման մեթոդների մշակմանը: Վ.–ի ղեկավարությամբ առաջին անգամ ԽՍՀՄ–ում սինթեզվել են ար–

հեստ. ալմաստներ (1960): ԽՍՀՄ Պետ. (1952), Լենինյան (1961) մրց-ներ:

ՎԵՐԵՇՉԱԳԻՆ Վասիլի Վասիլևիչ (1842–1904), ռուս. գեղանկարիչ: Հեղինակ է Թուրքեստանում (1871–74), Բալկաններում (1870-ական թթ-ի վերջ–1880-ական թթ-ի սկիզբ), Հայրեն. (1812) պատերազմների թեմաներով մարտանկարների (1887–1904): Առանձնահատուկ նշանակություն ունի «Պատերազմի ապոթեոզը» (1871) գործը՝ անցյալի, ներկայի, ապագայի բոլոր նվաճող. պատերազմների դեմ: Ջոհվել է Պորտ-Արտուրում՝ «Պետրոպավլովսկ» զրահանավի պայթյունից 1904–05-ի ռուս-ճապ.ն. պատերազմի ժամանակ

ՎԵՐԹՀԱՅՄԵՐ (Vertheimer) Մաքս (1880–1943), գերմանացի հոգեբան: Գեշտալտ հոգեբ-յան հիմնադիր-գլխ. տեսաբան-ներից: 1933-ից՝ վտարանդի (ԱՄՆ): Աշխ-ները վերաբերում են շարժման ընկալման փորձարար. հետազոտություններին և արդյունավետ մտածողությանը:

ՎԵՐԻԳՈ Բրոնիսլավ Ֆորտունատովիչ (1860–1925), ռուս. ֆիզիոլոգ: Ի. Մ. *Սեչենովի* աշակերտը: Հաստատել է թթվածնի ազդեցությունն արյան՝ ածխաթթու գազը կապելու հատկության վրա (Վ.-ի էֆեկտ): Աշխ-ներ ունի նաև էլեկտրաֆիզիոլոգիայի բնագավառում:

ՎԵՐԻԶՄ (իտալ.՝ vero – ճշմարիտ, ճշմարտացի), XIX դ-ի վերջի ռեալիստ.՝ նատուրալիզմին մոտ ուղղություն իտալ. գրկ-յան (Ջ. Վերգա, Լ. Կապուանա, Դ. Չամպոլի, Ռ. Ֆուչչինի, Մ. Սերաո և ուր.), երաժշտության մեջ (Պ. Մասկանյի, Ռ. Լեոնկավալո, Ջ. Պուչչինի) և կերպարվ-ում (Ֆ. Պ. Միկկետի, Ջ. Պելլիցցա դա Վոլպեդո, Վ. Վելա և ուր.):

ՎԵՐԻՆ ՆԱՎԵՐ, բրոնզի և վաղ երկաթի դարերի (մ. թ. ա. XXIII–X դդ.) դամբարանադաշտ ՀՀ-ում՝ Աշտարակից 3 *կմ* արմ.՝ Արագածի հվ. ստորոտում: Հայտնաբերվել են գունազարդ խեցանոթներ, բրոնզե զենքեր, պղնձե և բրոնզե զարդարանքի առարկաներ, ապակուց, հախճապակուց, գիշերասաթից, սարդիոնից, ծով. խխունջներից պատրաստված ուլունքներ ևն: Թաղումները հիմնականում անհատական են:

ՎԵՐԻՆԹՐԱԿՅԱՆ ՅԱԾՐԱՎԱՅՐ, Բուլղարիայում՝ Ռոդոպների և Սրեդնա Գորա լ-շղթայի միջև: Երկ.՝ 160 *կմ*: Վ. ց-ով է հոսում Մարիցա գետը: Երկրագործ. շրջան է: Վ. ց-ում են Պլովդիվ, Ստարա Զագորա, Դիմիտրովգրադ ք-ները:

ՎԵՐԻՆՎՈԼԳՅԱՆ ԼՃԵՐ, Վալդայան բարձ-յունում, Վոլգայի վերին հոսանքում: Ընդհ. մակերեսը՝ 183 *կմ*²: Ռուսաստանի առաջին խոշոր ջրամբարներից է:

ՎԵՐԻՇԵՆԻ ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑԻ, ճարտ. հուշարձան ՀՀ Այնսիքի մարզի Վերիշեն գ-ում: Եկեղեցին (IV–V դդ.) կանգուն է և ամենախոշոր միանավ թաղածածկ եկեղեցին է (երկ.՝ 27,3 *մ*) ՀՀ-ում: Վերիշենում և շրջակայքում պահպանվել են խաչքարեր (XV–XVII դդ.):

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ, *երկրաչափության* բաժին, որտեղ երկրչփ. պատկերների (կետերի, գծերի, մակերևույթների) հատկություններն ուսումնասիրվում են հանրահաշվի միջոցներով՝ կոորդինատների մեթոդի օգնությամբ, այսինքն՝ այն հավասարումների հատկությունների ուսումնասիրությունների եղանակով, որոնց գրաֆիկներն այդ պատկերներն են: Վ. ե-ում ուսումնասիրում են 1-ին և 2-րդ կարգի գծերը (մակերևույթները): 1-ին կարգի գծերը (հարթությունները) ուղիղներ են: 2-րդ կարգի գծերից (մակերևույթներ) են էլիպսները, հիպերբոլները, պարաբոլները (էլիպսոիդներ, հիպերբոլոիդներ, պարաբոլոիդներ): Վ. ե. առաջինը շարադրել է Ռ. *Դեկարտը* XVII դ-ի 1-ին կեսին:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **համալիր հոգեբանություն**, խորքային հոգեբ-յան ուղղություններից: Հիմնադրել է Կ. Գ. *Յունգը* (1913): Ըստ Վ. հ-յան՝ հոգեկանը ինքնակարգավորվող համակարգ է, որը հիմնվում է գիտակցականի և անգիտակցականի փոխհատուցման վրա, որոնց ներգրավվածությունն անհատի ամբողջականության ուղին է, նրա անհատականացումը: 1958-ից գործում է Վ. հ-յան միջազգ. կազմ-յունը, տպագրում է «Էրանոս» տարեգիրքը (1933-ից, Ցյուրիխ), «Վերլուծական հոգեբանության ամսագիրը» (1955-ից, Լոնդոն):

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, XX դ-ի արմ., գլխավորապես՝ անգլո-ամերիկ. փիլ. ուղղություն: Պոզիտիվիզմի տարատեսակներից, որը փիլ-յան խնդիրը համարում է լեզվի վերլուծությունը: Հիմն. հոսանքներն են տրամաբ. վերլուծության փիլ-յունը (տրամաբ. էմպիրիզմը (Ռ. Կառնապ, Կ. Հեմպել, Ֆ. Ֆրանկ) և տրամաբ. պրագմատիզմը (Ու. Քուայն, Ն. Հուդմեն) և լեզվաբ. փիլ-յունը:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՔԻՄԻԱ, **անալիտիկ քիմիա**, նյութերի քիմ. բաղադրության որոշման սկզբունքներն ու եղանակներն ուսումնասիրող գիտ-յուն: Ներառում է որակ. և քանակ. վերլուծությունները: Զևավորվել է *անօրգանական քիմիայի* հետ՝ այլ քիմ. գիտ-յուններից առաջ (մինչև XVIII դ-ի վերջը քիմիան համարվում էր նյութի քիմ. բաղադրությունն ուսումնասիրող գիտ-յուն): XVII դ-ի 2-րդ կեսին Ռ. *Բոյլը* մշակել է Վ. ք-ի հիմունքները: Վ. ք-ին բնորոշ են ոչ միայն սովոր. քիմ. (ծանրաչափ., տիտրաչափ. վերլուծություն), ֆիզքիմ. (վերլուծության էլեկտրաքիմ. եղանակներ, լուսաչափ. վերլուծություն) և ֆիզ. (սպեկտր., ակտիվացում. վերլուծություն ևն) եղանակների, այլ նաև միկրոօրգանիզմների՝ իրենց բնակության միջավայրի փոփոխության հանդեպ ռեակցիայի ուսումնասիրության վրա հիմնված կենսք. եղանակների կիրառումը:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱ, *ֆունկցիա*, որը որոշակի տիրույթում կարելի է ներկայացնել աստիճան. շարքի տեսքով: Մաթ-ում և նրա կիրառություններում օգտագործվող ֆունկցիաների մեծ մասը Վ. ֆ. է: Վ. ֆ-ի տեսությունը կոմպլեքս փոփոխականի ֆունկցիայի տեսության կարևորագույն մասն է:

ՎԵՐԼՈՒԾԻՉՆԵՐ, (կենսբ.), մարդու և բարձրակարգ կենդանիների զգացող նյարդ. գոյացությունների բարդ համակարգեր, որոնք ընկալում և վերլուծում են գրգիռները:

ՎԵՐԽՈՅԱՆՍԿԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, լեռն. համակարգ Յակուտիայում (ՌԴ): Ձրբաժան է Լենայի և Ալդանի, Օմոլոյի, Յանայի և Ինդիգիրկայի միջև: Երկ.՝ շուրջ 1200 *կմ*, լայն.՝ 100–250 *կմ*, բարձր.՝ մինչև 2389 *մ*: Տարածված են խեժափիճու նոսրանտառները, մայրու թփուտները և լեռն. տունդրան: Կան ոսկու և անագի հանքավայրեր:

ՎԵՐԾԱՆՈՒՄ գրության, 1. անհայտ լեզվի կամ գրության (կամ և՛ մեկի, և՛ մյուսի) հասկանալիության վերականգնումը: Վերծանելիս պարզաբանվում է գրի բնույթը: Անկախ գրության վերլուծությունից՝ կարող է ուսումնասիրվել բնագրի քերակ-ը, արտահայտած իմաստը: Վ.-ման աշխ-ները ծավալվել են XIX դ-ի սկզբից: Վ.-ման բնագավառում հայտնի են Ա. Սեյսը, Գ. Ֆ. Գրոտեֆենդը, Թ. Յունգը, Ժ. Ֆ. Շամպոլիոնը, Է. Հինքսը, Ֆ. Թալբորդը, Վ. Թոմսենը, Բ. Հրոզնին, Ա. Էվանսը և ուր.: 2. Դաս. գրաբարի առումով՝ տեքստի ընթերցումը, թարգմ-յունը, խրթին կամ անհասկանալի հատվածների մեկնաբանումն ու պարզաբանումը, նաև հայկ. խազերի (ձայնանիշներ) համակարգի և հայկ. գաղափարագրերի բանալիները գտնելը: 3. Ծածկագրով, գաղտնագրով, ռադիոյով, մորզեով, լուսային և այլ միջոցներով հաղորդվող տեքստերի իսկական իմաստների բացահայտումը:

ՎԵՐՀԱՌՆ (Verhaeren) Էմիլ (1855–1916), բելգիացի ֆրանսիագիր բանաստեղծ, դրամատուրգ, քննադատ: Հեղինակ է «Ֆլամանդուհիներ» (1883), «Վանականները» (1886), «Երեկոներ» (1887), «Փլուզումներ» (1888), «Սև ջահեր» (1890), «Կատաղի ուժեր» (1902), «Տերունական ոիթմեր» (1910) և այլ բանաստեղծությունների ժող-ների, «Արշալույսներ» (1898) պիեսի և այլ գործերի: ԱՀՊ-ն դատապարտող «Պատերազմի ալ թևերը» (1916) ժող-ում զետեղել է արևմտահայության ողբերգությունն արտացոլող «Ազգաջինջ Գերմանիա» պոեմը և «Աղաղակը» (հայ.՝ 1917) բանաստեղծությունը: Նամակագր. կապ է ունեցել Ա. Հարությանի, Է. Շահինի, Կ. Զարյանի, Ա. Չոպանյանի հետ: Գրել է Ա. Չոպանյանի «Կյանք և երազ» (1913) ֆրանս. ժող-ի առաջաբանը:

ՎԵՐՀՈՒՇՈՒԹՅՈՒՆ, **անամնեզ** (հուն.՝ anamnesis – հիշողություն), հիվանդության զարգացման, հիվանդի կյանքի պայմանների, անցյալում կրած հիվանդությունների նևի մասին տեղեկությունների ամբողջություն, որը հավաքվում է տվյալ հիվանդության ախտորոշման, բուժման, կանխարգելման և ելքը կանխատեսելու նպատակով:

ՎԵՐՄԵՐ ԴԵԼՖՏԱՑԻ (Vermeer van Delft) Յան (1632–1675), հոլանդացի գեղանկարիչ: Դելֆտի ք-ի բնակիչների կյանքը պատկերող մտերմիկ նկարներին [«Նամակով աղջիկը», «Մարգարտահատիկով աղջիկը» («Մարգարտե ականջողով աղջիկը»), «Մեկ գավաթ գինի»], բնանկարներին («Դելֆտի տեսարան», «Փոքրիկ փողոց») բնորոշ են առօրյա կյանքի բանաստեղծ. ընկալումը, կոմպոզիցիաների դաս. պարզությունը, գուներանգի հարստությունն ու նրբությունը, լույսի և օդի կենդանի շարժումը:

ՎԵՐՄԻԿՈՒԼԻՏ (լատ.՝ vermiculus – որդ, տաքացնելիս փքվում, երկարում է որդի նման), միներալ հիդրոփայլարների խմբի շերտավոր սիլիկատների ենթախմբից՝ $(Mg, Fe^{2+}, Fe^{3+})_3(OH)_2[(Si, Al)_4O_{10}]_4H_2O$: Պարունակում է Ca-ի, Ni-ի խառնուրդներ: Առաջացնում է թերթավոր ագրեգատներ, դեղին, գորշագույն խոշոր բյուրեղներ: Կարծր.՝ 1–1,5, խտ.՝ 2,4–2,7 $գ/սմ^3$: Մինչև 900–1000°C տաքացնելիս փքվում է՝ 20–30 անգամ մեծացնելով սեփական ծավալը: Ունի բարձր ջերմա- և ձայնամեկուսիչ հատկություններ: Օգտագործում

են շին–յան մեջ՝ ջերմամեկուսիչ իրերի, ձայնակլանիչ նյութերի, թեթև բետոնի պատրաստման համար: Կիրառվում է նաև որպես ոտինի, պլաստմասսաների, ներկերի, քիմիկատների լցանյութ:

ՎԵՐՄԻՇԵՎ, Ալեքսանդր Ալեքսանդրի (1879–1919), դրամատուրգ, բանաստեղծ, հրապարակախոս, իրավաբան: Գրել է ռուս.: Հեղինակ է «Ճշմարտության ճանապարհին», «Համբավաբերներ», «Մոլի սեր», «Կարմիր ճշմարտություն» պիեսների, «Սևորակ աչեր...» («Օչի չյոռնիե...») հանրահայտ երգի խոսքերի ու երաժշտության: Զոհվել է սպիտակ գվարդիականի գնդակից:

ՎԵՐՄԻՇԵՎ, Գրիգոր Քրիստափորի (1894–1973), զինվորական, գրող: Յուրի *Վերմիշևի* եղբայրը: Գրել է ռուս.: 1920–ին՝ թուրքերի դեմ մարտնչող հայկ. հեծելազոր. ջոկատի հրամ.: 1923–56–ին պաշտոնավարել է Մոսկվայում: Հեղինակ է «Ամիրսպասալար» (1968, հայ.՝ 2012), «Թագավորության մայրամուտը», «Թամթա», «Հրաձիգ ժողովուրդը» (երեքն էլ՝ անտիպ) վեպերի, որտեղ ներկայացրել է Զաքարյան իշխանների (նրանց ժառանգն է մոր կողմից) պատմությունը:

ՎԵՐՄԻՇԵՎ, Կոնստանտին Քրիստափորի (1901–1973), տնտեսագետ: Տնտեսագիտ. թեկնածու (1953): Գրիգոր և Յուրի *Վերմիշևների* եղբայրը: Սեղա Վերմիշևայի հայրը: Աշխ–ները վերաբերում են հանրապետության արդ–յան, Էներգետիկայի, հանք. հումքի օգտագործման և բնապահպանության հարցերին: Դեմ է եղել Սևանի ջրերն Էներգետիկ. նպատակով օգտագործելուն: Եղել է ՀՀ թենսիսի ֆեդերացիայի նախագահ:

ՎԵՐՄԻՇԵՎ, Յուրի Քրիստափորի (1920–2011), հրթիռ. տեխնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1971), պրոֆ. (1978): Գնդ. ( ): Գ. *Վերմիշևի* եղբայրը: 1955–61–ին՝ ԽՍՀՄ ՊՆ 4–րդ վարչության թեմատիկ բաժնի պետի տեղակալ, 1961–81–ին՝ կենտր. ԳՀԻ–45–ի (Մոսկվայի մարզի ք. Բարուշկինո) վարչության պետ–ինստ–ի պետի տեղակալ: ՌԲՆԳԱ (1992), Տեղեկատվայնացման միջազգ. ակադ–ի (1993) անդամ: ԽՍՀՄ Պետ. (1974), ՌԴ Կառ–յան (2001) մրց–ներ:

ՎԵՐՄԻՇԵՎ, Քրիստափոր Ավակումի (1863–1933), պետ. գործիչ, լրագրող: Եղել է Հայաստանի առաջին հանրապետության՝ Քաջազնունու կառ–յան մատակարարման նախարար: Թիֆլիսի քաղաքագլուխ (հոկտ. 1904–սեպտ. 1905): 1909–ին խմբագրել է «Բաքու» (ռուս., Բաքու) թերթը:

ՎԵՐՄԻՇԵՎԱ, Սեդա Կոնստանտինի (ծ. 1932), բանաստեղծուհի, հրապարակախոս, հաս. գործիչ: Սուրեն *Զոլյանի* մայրը: Գրում է ռուս.: 1988–ից զբաղվել է Ղարաբաղյան հիմնախնդրով: Հեղինակ է «Արևը բարձրակետում» (1970), «Առկայծող կետագծեր» (1974), «Տերևներ» (1982), «Ժայռանախիշեր» (1988), «Անհարթ սեպագիր» (1999), «Սիրո թև» (1999), «Քարից և ավազից» (2005) բանաստեղծությունների ժող–ների, նաև վերլուծ. աշխ–ների:

ՎԵՐՄՈՆԹ (Vermont), նահ. ԱՄՆ–ի հս–արլ–ում: Տարածքը՝ 24,9 հզ. *կմ*^{2}, բն.՝ 626,6 հզ. (2010): Վարչ. կենտրոնը՝ Մոնթփիլիեր:

ՎԵՐՆԱԹԵՎԵՐ, խիտինացված առջևի թևերը, որոնք ծածկում են որոշ միջատների (բզեզներ, փայտոջիլներ) մեջքին տեղակայված հետին թևերը (հանգստի պահին):

ՎԵՐՆԱՇԵՆԻ ՋՐՀԱՆ ԿԱՅԱՆ, ՀՀ Վայոց ձորի մարզում՝ Վերնաշեն գ–ի մոտ: Շահագործման է հանձնվել 1971–ին: Մնվում է Եղեգիս գետից: Տեղադրված են 7 ջրհան պոմպեր, մղման բարձր.՝ 38 *մ*, ջրի ելքը՝ 1,12 *մ*^{3}/*վ*: Ոռոգում է 860 *հա* հողատարածք:

«ՎԵՐՆԱՏՈՒՆ», գր. խմբակ: Հիմնադրվել է 1899–ին Թիֆլիսում՝ Հովհաննես *Թումանյանի* բնակարանում: Հիմնադիր անդամներն էին Հ. Թումանյանը, Ղազարոս *Աղայանը*, Ավետիք *Իսահակյանը*, Լևոն *Շանթը*, Դերենիկ *Դեմիրճյանը*: Կազմակերպել են գր. ընթերցումներ, գրույցներ, ասուլիսներ, տպագրված և անտիպ երկերի քննարկումներ: Գոյատևել է մինչև 1908–ը: Դարձել է *Հայ գրողների կովկասյան ընկերության* հիմքը: 1997–ից Թիֆլիսում գործում է Վրաստանի հայ գրողների «Վ.» համանուն միությունը:

ՎԵՐՇԻԳՈՐԱ, Պյոտր Պետրովիչ (1905–1963), ռուս. գրող, գեն–մայոր (1944): ԽՄ հերոս (1944): ՀՄՊ–ի ժամանակ եղել է պարտիզան. միավորման հրամ.: Հեղինակ է «Մաքուր խղճով մարդիկ» (1946, հայ.՝ 1948), «Կարպատյան ռազմերթ» (1950) և «Ռազմերթ դեպի Սան և Վիսլա» (1959) էպոպեայի: Վ–ի գլխավորած դիվիզիայի շարքերում է մարտնչել *«Հաղթանակ»* հայկ. պարտիզան. ջոկատը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1947):

ՎԵՐՇԻՆԻՆ Յուրի Նիկոլաևիչ (1932–2006), ռուս էլեկտրատեխնիկ: ՌԳԱ թղթ. անդամ (1987): Աշխ–ները վերաբերում են դիէլեկտրիկների, հաղորդիչ և էլեկտրամեկուսիչ նյութերի հետազոտություններին, էլեկտրատեխ. բետոնների և բարձրավոլտ շինվածքների ու դրանց հիմքով կառուցվածքների ստեղծմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1985):

ՎԵՐՈՆԱ, (Verona), ք. Իտալիայի Վենետիկի մարզում՝ Ադիջե գետի ափին, համանուն գվո–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 265 հզ. (2010): Տրանսպորտ. հանգույց է: Ունի համալսարան: Մ. թ. ա. 89–ից եղել է հռոմ. գաղութ: XII դ–ում անցել է Լոմբարդ. լիգային: 1866–ից մտել է Իտալիայի թագավորության կազմի մեջ: Պահպանվել են հռոմ. ասպարեզ, թատրոն, ամրությունների մնացորդներ, անտիկ ժամանակաշրջանի Պոնտե Պիետրա կամուրջը: Ճարտ. հուշարձաններից են ռոմոն. ոճի Սան Ձենո Մաջորե (V դ., վերակառուցվել է IX դ–ում և 1120–38–ին) և Պալացցո դել Կոմունե (XII դ–ի սկիզբ), Պալացո դել Գովեռնո (XIII–XIV դդ.) եկեղեցիները և Կաստելվեկկիո գոթ. դղյակը (1354–75)՝ Սկալիգերների կամրջով, պալատները (Պոմպեի՝ 1530, Կանոսսա՝ մոտ 1530, Բեիլակվա՝ 1532), քաղաքի ամրոցի դարպասներ, դաս. ոճի Ռատուշան (1836–38): Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՎԵՐՈՆԵԶԵ (Veronese, Կալիարի) Պաոլո (1528–1588), Վերածննդի շրջանի իտալացի գեղանկարիչ: Վ–ի տոն., աշխարհիկ ոգով նկարները, պանոները, որմնանկարներն աչքի են ընկնում ճարտ–յան հետ օրգ. կապով, կոմպոզիցիաների բարդությամբ, արծաթավուն գուներանգի նրբաճաշակությամբ (Բարբարո–Վոլպի վիլլայի որմնանկարները, մոտ 1561, Մազերում, «Ամուսնություն Կանայում», 1562–63):

ՎԵՐՈՆԻԿԱՅԻ ՎԱՐՍԵՐ (լատ.՝ Coma Berenices), երկնքի հս. կիսագնդի համաստեղություն՝ Եզնարած, Կույս, Առյուծ, Որսկան Շներ համաստեղությունների միջև: Վ. Վ–ում է գալակտիկաների ամենահարուստ կույտերից մեկը (մոտ 1000 գալակտիկա): Մեր Գալակտիկայի Հս. բևեռը նույնպես համաստեղությունում է:

ՎԵՐՈՍՏԱ (Verosta) Ստեֆան (1909–1998), ավստրիացի դիվանագետ, իրավաբան–միջազգայնագետ: Հաագայի իրավար. մշտ. դատարանի (1957), Վիեննայի դիվանագիտ. ակադ–ի (1962), Ավստրիայի ԳԱ (1964) անդամ: Եղել է ՄԱԿ–ի հյուպատոս. հարաբերությունների գծով խորհրդաժողովի նախագահ (1963): Անդրադարձել է Արշակունյաց Հայաստանի միջազգ. իրավ. դրությանը, Հայաստանի վիճակին՝ երկիրը Հռոմ. կայսրության և Պարսկաստանի միջև բաժանելուց (387) հետո:

ՎԵՐՋԱՎՈՐ ԱՃԵՐԻ ԲԱՆԱՁԵՎ, *Լագրանժի բանաձև*, դիֆերենցիալ հաշվի բանաձևերից. կապ է հաստատում f (x) ֆունկցիայի աճերի և ֆունկցիայի ածանցյալի արժեքների միջև՝ f(b) – f (a) = = (b – a)f(c), որտեղ a < c < b:

ՎԵՐՋԵՐԻՈ (Vergerio) Պիետրո Պաուլո (1370–1444), իտալացի հումանիստ: «Ազնվաբարո բարքերի և ազատ գիտությունների մասին» (մոտ 1402) տրակտատում շարադրել է հումանիստ. մանկավարժության հիմն. սկզբունքները: Մեզ հասած «Պավել» (1388–90) առաջին բարոյախրատ. կատակերգության հեղինակն է:

«ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ», ազգ., քաղ. օրաթերթ (1914–30, Կ. Պոլիս): Խմբ–ներ՝ Հակոբ Տեր–Հակոբյան, Արտաշես Գալփակճյան, Վահան Թոշիկյան:

ՎԵՐՋՆԱԳԻՐ, *ուլտիմատում* (ուշ լատ.՝ ultimatum – մինչև վերջ հասցնելը, լատ.՝ ultimus – վերջինը, ծայրահեղը), միջազգ. իրավունքում որևէ որոշակի հարցով որոշակի ժամկետում որոշակի դիրք ընդունելու, գործողություններ կատարելու կամ որոշակի պայմաններ ապահովելու կտրուկ պահանջ, որը ներկայացնում է մի պետությունը մյուսին: Վ–ի չկատարումը կարող է հանգեցնել դիվանագիտ. հարաբերությունների խզման, *փոխհաշման*, *ազդամիջոցի* ևն: Սպառնալիք, ուժի գործադրում բովանդակող Վ. ՄԱԿ–ի կանոնադրությամբ արգելվում է:

ՎԵՐՋՈՒՅԹՆԵՐ, կենդանիների տեղաշարժման օրգաններ: Պարզագույն Վ. որոշ օղակավոր որդերի պարապոդիումներն են, ձկների զույգ Վ. լողակները: Թռչունների և չղջիկների առջևի վերջույթները վերածվել են թևերի, կետանմանների՝ մաշկաթաթերի: Սարդու վերին Վ. ձեռքերն են, ստորինները՝ ոտքերը:

ՎԵՐՍԱԼ, (Versailles), ք. Ֆրանսիայում, Փարիզի հվ–արմ. արվարձանը, Իվելինի դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 84,2 հզ. (2010): Կառուցվել է 1671–ից: 1682–1789–ին եղել է Ֆրանսիայի թագավորների գլխ. նստավայրը: Լյուդովիկոս XIII–ի ոչ մեծ որսորդ. դղյակից XVII–XVIII դդ–ում վերաճել է վեհաշուք պալատապուրակ. համալիրի՝ մեծածավալ պալատով (ճակատի երկ.՝ 576,2 *մ*) և կանոնավոր պուրակով (տարածքը՝ 6 հզ. *հա*–ից ավելի): Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՎԵՐՄԱԼԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, 1. 1783, կնքել են մի կողմից՝ ԱՄՆ–ն ու նրա դաշնակիցները՝ Ֆրանսիան, Իսպանիան, Նիդեռլանդները, մյուս կողմից՝ Մեծ Բրիտանիան: Ավարտել է 1775–83–ի Անկախության համար պատերազմը Հս.

Ամերիկայում: Մեծ Բրիտանիան ճանաչել է ԱՄՆ-ի անկախությունն ու ինքնիշխանությունը: 2. **1919**, պաշտոնապես ավարտել է ԱՀՊ-ն. հունիսի 28-ին Վերսալում (Ֆրանսիա) ստորագրել են՝ մի կողմից հաղթող պետությունները՝ ԱՄՆ-ն, Բրիտ. կայսրությունը, Ֆրանսիան, Իտալիան ու Ճապոնիան, ինչպես նաև Բելգիան, Բոլիվիան, Բրազիլիան, Կուբան, Էկվադորը, Հունաստանը, Գվատեմալան, Հայիթին, Հիջազը, Հոնդուրասը, Լիբերիան, Նիկարագուան, Պանաման, Պերուն, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Սերբերի, Խորվաթների ու Սլովենների պետությունը, Միամը, Չեխոսլովակիան, Ուրուգվայը, մյուս կողմից՝ պարտված Գերմանիան: Վ. հ. պ-ի պայմանները մշակվել են ***Փարիզի հաշտության խորհրդաժողովում*** (1919–20, ուժի մեջ է մտել 1920-ի հունվ. 10-ին): Պայմանագրով՝ Գերմանիան Ֆրանսիային էր վերադարձնում Էլզասն ու Լոթարինգիան (1870-ի սահմաններում), Սաարի ածխահանքերը (իսկ մարզի տարածքը 15 տարով անցնում էր Ազգերի լիգայի տնօրինությանը), Բելգիային՝ Մալմեդիի և Էյպենի օկրուգները, ինչպես նաև Մորենեի չեզոք ու պրուս. մասերը, Լեհաստանին՝ Պոզնանը, Պոմորիեի մի մասը և Արմ. Պրուսիայի այլ տարածքներ. Դանցիգը (Գդանսկ) և նրա օկրուգը հայտարարվում էր «ազատ քաղաք», Մեմելը (Կլայպեդա) անցնում էր հաղթող տերությունների տնօրինությանը (1923-ին միացվել է Լիտվային), Շլեզվիգի, Արլ. Պրուսիայի հվ. մասի և Վերին Սիլեզիայի պետ. պատկանելության հարցը պետք է վճռվեր հանրաքվեով, որի հետևանքով Շլեզվիգի մի մասը 1920-ին անցել է Դանիային, Վերին Սիլեզիայի մի մասը 1921-ին՝ Լեհաստանին, Արլ. Պրուսիայի հվ. մասը մնացել է Գերմանիային, Չեխոսլովակիային անցել է Սիլեզիայի տարածքի մի փոքրիկ մասը, բուն լեհ. հողերը՝ Օդերի արմ. ափին, Ներքին Սիլեզիան, Վերին Սիլեզիայի մեծ մասը (100 հզ. *կմ*²) մնացել են Գերմանիային: Գերմանիան խստագույնս պարտավորվում էր հարգել Ավստրիայի անկախությունը, ինչպես նաև ճանաչել Լեհաստանի և Չեխոսլովակիայի լիակատար անկախությունը: Հռենոսի ձախափնյա ամբողջ գերմ. ափը և աջափնյա 50 *կմ* լայն-յամբ շերտը ենթակա էր ապառազմականացման: Գերմանիան զրկվում էր իր բոլոր գաղութներից, որոնք ավելի ուշ (Ազգերի լիգայի մանդատով) բաժանվել են Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Բելգիայի և ճապոնիայի միջև: Պայմանագրով գերմ. ԶՈՒ սահմանափակվում էին 100-հզ-անոց ցամաք. բանակով, վերացվում էր պարտադիր զինծառայությունը, պահպանված ՌԾՈՒԻ-ի հիմն. մասը տրվում էր հաղթողներին: Գերմանիան պարտավորվում էր վճարել ռազմատուգանք: Վ. հ. պ. Վերսալ-Վաշինգտոնյան համակարգի հիմքը կազմող կարևորագույն պայմանագրերից էր: Վ. հ. պ. անքակտելի մասն էր կազմում Ազգերի լիգայի ստատուտը: ԱՄՆ-ն չի վավերացրել Վ. հ. պ. և 1921-ի օգոստ-ին առանձին հաշտություն է կնքել Գերմանիայի հետ, որը գրեթե չէր տարբերվում Վ. հ. պ-ից, սակայն չէր պարունակում Ազգերի լիգայի վերաբերյալ հոդվածներ:

ՎԵՐՍԱԼ-ՎԱՇԻՆԳՏՈՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, պայմանագրերի համակարգ, որը հաստատել են հաղթող պետությունները (գլխավորապես՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ն և Ճապոնիան) ԱՀՊ-ից հետո: Նպատակն աշխարհի հետպատերազմյան վերաբաժանումն էր: Ուղղված էր ոչ միայն պարտված պետությունների, այլև խորհրդ. երկրի և գաղութ. ու կախյալ երկրներում ազգ-ազատագր. շարժման դեմ: Վ.-Վ. հ-ի հիմքում ընկած էին ***Վերսալի հաշտության պայմանագիրը*** (1919) և նրան առնչվող ***Սեն-Ժերմենի հաշտության պայմանագիրը*** (1919), Նոյի (1919), Տրիանոնի (1920) հաշտության պայմանագրերը, ***Սևրի հաշտության պայմանագիրը*** (1920), ***Վաշինգտոնի խորհրդաժողովում*** (1921–22) ստորագրված մի շարք համաձայնագրեր ևն: Վ.-Վ. հ. չկարողացավ վերացնել տերությունների միջև հակասությունները: Բռնկված ԵՀՊ-ն վերջնականապես քայքայել է Վ.-Վ. հ.:

ՎԵՐՎԵՐԻ, հայկ. ժող. պարաճև: Կազմված է 2 գնալ, 1 դառնալ և 2 գնալ, 2 դառնալ պար. ֆիգուրներից: Միավորում է մի շարք պարեր՝ իրենց եղանակներով (հիմնականում՝ 2/4 չափով): Կատարում են առավելապես երիտասարդները՝ խառը խմբով: Տեմպն արագ է:

ՎԵՐՏԻՆՍԿԱՅԱ Անաստասիա Ալեքսանդրովնա (ծ. 1944), ռուս. դերասանուհի: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1988): Մ. Ա. ***Վերտինսկայայի*** քույրը: 1968–80-ին՝ Մոսկվայի «Սովրեմեննիկ» թատրոնի, 1980–88-ին՝ ՄԳԱԹ-ի դերասանուհի: Նկարահանվել է «Ալ առագաստներ», «Երկկենացաղ մարդը», «Պատերազմ և խաղաղություն», «Աննա Կարենինա», «Համլետ», «Անանուն աստղ» (հեռուստաֆիլմ) և այլ կինոնկարներում:

ՎԵՐՏԻՆՍԿԱՅԱ Մարիաննա Ալեքսանդրովնա (ծ. 1943), ռուս դերասանուհի: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1991): Ա. Ա. ***Վերտինսկայայի*** քույրը: 1966–2005-ին՝ Մոսկվայի Ե. Վախթանգովի անվ. (Տուրանդոտ՝ Կ. Գոցցիի «Արքայադուստր Տուրանդոտ», Լիդիա՝ Մ. Գորկու «Բարբարոսներ», ևն), 2005-ից՝ Մոսկվայի «Մոդեռն» դրամատիկ. թատրոնների դերասանուհի: Նկարահանվել է «Քսան տարեկան եմ», «Վարպետների քաղաքը», «Եֆրեյտոր Զբրուևի յոթ հարսնացուները», «Ժառանգորդուհիներ» (վերջին երկուսը՝ հեռուստաֆիլմ) և այլ կինոնկարներում:

ՎԵՐՏՈՎ Զիգա, Դենիս Արկադևիչ (Դավիդ Արելևիչ Կաուֆման, 1895/96–1954), ռուս. ռեժ., սցենարիստ, կինոտեսաբան: Ռուս. և համաշխ. վավերագր. կինոյի հիմնադիրներից: Ֆիլմերում տեղեկատվությունը զուգակցել է նրանց հրապարակախոս. կերպար. վերաիմաստավորման հետ՝ ստեղծելով բանաստեղծ. հատուկ կինոլեզու, նոր արտահայտչամիջոցներ («Կինո-ճշմարտություն», 1922–25, կինոժուռնալ, «Հեղափոխության տարեդարձը», 1919, «Կինո-աչք», 1925, «Աշխարհի վեցերորդ մասը», 1926, «Դոնբասի սիմֆոնիան», 1930, «Երեք երգ Լենինի մասին», 1934, ևն):

ՎԵՐՔՈՐ (Vercors, Ժան Բրյուլեր, Bruller, 1902–1991), ֆրանսիացի գրող: Հեղինակ է «Ծովի լռությունը» (1942) վիպակի, «Իմադրության շարժման մասին «Լռության ճակատամարտ» (1967) հուշագրության, բարոյափիլ. խնդիրներ արծարծող «Աղավաղված կենդանիներ» (1952) վեպի, «Ինչպես եղբայր» (1973) սոցիալ. թեմայով առակի, «Նուրբ փլուզում» (1974) վեպի, ակնարկների:

ՎԵՐՖԵԼ (Werfel) Ֆրանց (1890–1945), ավստրիացի գրող: 1938-ից՝ վտարանդի (նախ՝ Ֆրանսիայում, 1940-ից՝ ԱՄՆ-ում): 1929-ին Սիրիա ճանապարհորդությունից հետո գրել է «Մուսա լեռան քառասուն օրը» (1932–33, հրտ.՝ 1934, Տարվա լավագույն վեպի միջազգ. մրց.) վեպը, որը թարգմանվել է 34 լեզվով (հայ.՝ 1935, թարգմ.՝ Ե. Տեր-Անդրեասյանի, 1964, թարգմ.՝ Պ. Միքայելյանի): Հեղինակ է նաև «Աշխարհի բարեկամը» (1912), «Մենք կանք» (1913), «Բարեկամը բարեկամի համար» (1915), «Դատաստանի օրը» (1919) բանաստեղծությունների ժող-ների, «Տրոյացի կանայք» (1914), «Մարդը հայելու միջից» (1920), «Ոչ թե սպանողը, այլ սպանվածն է մեղավոր» (1920) դրամաների, «Վերդի» (1923, հայ.՝ 1986) վեպի, «Յակոբինսկին և գնդապետը» (1944) պիեսի և այլ գործերի: 1996-ին Վ-ի գերեզմանից բերված հողով սափոր է ամփոփվել Հայոց ցեղասպանության հուշահամալիրի Հուշապատում:

ՎԵՑԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ, XIII դ-ի ճարտ.: Կառուցել է Կեչառիսի վանքի Կաթողիկե եկեղեցին (XIII դ.): Միջնադար. Հայաստանի միակ ճարտ-ն է, որի գերեզմանին հուշակոթող է կանգնեցվել (հեղինակներ՝ Վ. Վ-ի ճարտ. եղբայրներ՝ Պետրոս, Հովհաննես և Ազարիա):

ՎԵՑՃԱՌԱԳԱՅԹԱՆԻ ՍՊՈՒՆԳՆԵՐ, **ապակե սպունգներ**, ***սպունգների*** տիպի ծով. անողնաշարների դաս: Կմախքը կազմված է վեցճառագայթանի կայծքար. ասեղներից: Հայտնի է մոտ 500 տեսակ, 100 *մ*խոր-ներում՝ մինչև գերաբիսալներ:

ՎԵՔԵՌԼԻՆ (Weckherlin) Գեորգ Ռուդոլֆ (1584–1653), գերմանացի բանաստեղծ, վաղ բարոկկոյի ներկայացուցիչ: Գերմ. գրկ. է ներմուծել օդայի ժանրը և ալեքսանդրյան բանաստեղծությունը: Հեղինակ է «Օդաներ և երգեր» (1618–19, «Հոգևոր և աշխարհիկ բանաստեղծություններ» (1641) ժող-ների:

ՎԵՔՔԻԼՅԱՆ (Վեքիլով) Իվան Դավթի (1894–1953), հրետանու գեն-լեյտ. (1943): Որպես հրետան. մարտկոցի հրամ.՝ մասնակցել է 1914–15-ի Սարիղամիշի ռազմագործողությանը: 1925–30-ին՝ Հայկ. 76-րդ լ-հրաձգ. դիվիզիայի գնդի հրամ.: Մասնակցել է Խորհրդա-ֆինն. պատերազմին: ՀՄՊ-ի սկզբին նշանակվել է Հվ-արմ. ուղղության հրետանու պետի, ապա՝ Կարմիր բանակի հրետանու շտաբի պետի տեղակալ:

ՎԶՆՈՅԱՎՈՐ ԷՅՐԵՆԻՍ (Eirenis collaris), լորտուների ընտանիքի էյրենիս սեռի օձ: Մարմնի երկ-յունը տարիքի հետ փոխվում է (9,6–32 *սմ*), պոչը մարմնից 4–5 անգամ կարճ է: Պարանոցի վրա կա շատ լայն մուգ, վզնոցանման շերտ (այստեղից՝ անվանումը): ՀՀ-ում հանդիպում է Շիրակի, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Սյունիքի, Տավուշի և այլ մարզերի նախալեռներում, Երևանի շրջակայքում: Մնվում է մանր անողնաշարներով, նաև մանր մողեսներով: Խնամվում և բազմացվում է անազատ պայմաններում: Օգտագործվում է ԳՀ նպատակներով: Կծածը մարդու և կենդանիների համար անվնաս է:

«ՎԷՄ», պատմամշակութ., հայագիտ., տնտեսագիտ., գր., հաս-քաղ. հանդես (1933–39, Փարիզ, 2009-ից՝ Երևան՝ որպես շարունակություն): ՀՅԴ հրտ-յուն: Հիմնադիր-խմբ.՝ Սիմոն Վրացյան, խմբ.՝ Գևորգ Խուդինյան (2009-ից):

ՎԻԱՆ (Vian) Բորիս (1920–1959), ֆրանսիացի գրող: Վ.-ի ստեղծագործությունը 1950–70-ական թթ.-ին եվրոպ. մշակույթի մեջ «երիտասարդական խռովության» վաղ դրսևորումներից է: Հեղինակ է «Օրերի փրփուրը» (1947), «Աշունը Պեկինում» (1947), «Կարմիր խոտ» (1950), «Սրտմաշուկ» (1953) վեպերի, «Մաշկազերծարան բոլորի համար» (1947, բեմ.՝ 1950), «Գեներալների հետճաշիկը» (1951), «Կայսրության կառուցողները» (1959) պիեսների, բանաստեղծությունների ժող.-ների:

ՎԻԱՐԴՈ-ԳԱՐՍԻԱ (Viardot-Garcia) Պոլինա (1821–1910), ֆրանսիացի երգչուհի (մեցցո-սոպրանո), մանկավարժ, կոմպոզիտոր: 1839-ից՝ Փարիզի Իտալ. օպերայի թատրոնի մեներգչուհի (Սաֆո՝ Շ. Գունոյի «Սաֆո», Նորմա՝ Վ. Բելլինիի «Նորմա», Ռոզինա՝ Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», ևն): Հեղինակ է կոմիկ. օպերաների («Վերջին կախարդը», 1869), լիբրետոների, ռոմանսների: Նրա սաներից է նաև Արմենակ *Շահմուրադյանը* (1904–06):

ՎԻԲՐԻՈՆՆԵՐ (ֆրանս.՝ vibrion, < լատ. vibro – տատանվել, գալարվել), քեմոօրգանաասուն բակտերիաների սեռ: Հայտնի է ավելի քան 25 տեսակ: Գրամբացասական, ստորակետանման կորացած ցուպիկներ են: Ունակ են արագ, տատանող. շարժումների (այստեղից՝ անվանումը): Ապրում են ջրամբարներում, հողում, աղիների պարունակության մեջ: Ախտածին ձևերն առաջացնում են կենդանիների վիբրիոզ, մարդկանց՝ խոլերա:

ՎԻԲՐԻՄՆԵՐ (լատ.՝ Vibrissae), կաթնասունների երկար, կոշտ, զգացող. (շոշափ.) մազեր: Սովորաբար տեղակայված են փնջերով՝ աչքերի մոտ, վերին և ստորին ծնոտների վրա (օր.՝ կատվազգիների բեղերը), երբեմն՝ մարմնի այլ մասերի (օր.՝ պարկավորների թաթերի) վրա:

ՎԻԳԵԼԱՆ (Vigeland) Գուստավ (1869–1943), նորվեգացի քանդ.: Հեղինակ է դիմաքանդակների («Հ. Իբսեն», 1903, ևն), հուշարձանների (Ն. Աբելի, 1908), Օսլոյի Ֆրոգներպարկի քանդակների համալիրի (մոտ 1905–43, շուրջ 150 ֆիգուր), որի քանդակներն աչքի են ընկնում մարդկային կյանքի փուլերի խորհրդանշ. մարմնավորմամբ:

ՎԻԳԵՐ (Whigs), 1. քաղ. կուս-յուն Մեծ Բրիտանիայում XVII–XIX դդ.-ում: Առաջացել է 1680-ական թթ.-ի վերջին՝ որպես բուրժուականացած ազնվականության, խոշոր առևտր. ու ֆին. բուրժուազիայի շահերն արտահայտող խմբավորում, որը դեմ էր թագավոր. բացարձակ պետության վերականգնմանը: ***Տորիների*** հետ հերթագայել են իշխանության ղեկի մոտ: XIX դ.-ի կեսին Վ., միավորվելով բուրժ. այլ քաղ. խմբերի հետ, վերակազմավորվել են որպես Մեծ Բրիտանիայի լիբերալ կուս-յուն: 2. Քաղ. կուս-յուն ԱՄՆ-ում 1834–54-ին: Հանդես է եկել կենտր. իշխանության հզորացման դեմ: 1854-ին հս. Վ. վերակազմավորվել են որպես Հանրապետ. կուս-յուն, իսկ հվ. Վ.՝ որպես Դեմոկրատ. կուս-յուն:

ՎԻԳՆԵՐ (Wigner) Յուջին (Էուգեն) Պոլ (1902–1995), ամերիկացի ֆիզիկոս տեսաբան: Առաջիններից է ցույց տվել (1931) քվանտ. մեխանիկայում խմբերի տեսության և համաչափությունների գաղափարի կիրառության արդյունավետությունը: Ամերիկ. առաջին միջուկ. ռեակտորի մշակման մասնակից: Նորելյան մրց. (1963):

ՎԻԳՈ (Vigo), ք-նվինգստ Իսպանիայի Գալիսիա ԻՕ-ում՝ Ատլանտ. օվկ-ի ափին: Բն.՝ 295 հզ. (2014):

ՎԻԴԱԼ (Vidal) Գոր (1925–2012), ամերիկացի գրող: Հեղինակ է «Ուիլլիվո» (1946), «Լինքոլն» (1984), «Կայսրություն» (1987), «Ռեպորտաժ Գողգոթայից: Ավետարան ըստ Գոր Վիդալի» (1992), «Սմիթսոնյան ինստիտուտ» (1998) վեպերի, «Վաշինգտոն, Կոլումբիայի օկրուգ» (1967), «Բերր» (1973) և «1876 թվականը» (1976) պատմ. եռերգության, «Միացյալ Նահանգներ. Էսսե 1952–1992» (1993), «Վերջին կայսրությունը. Էսսե 1992–2000» (2000) վավերագր. երկերի, «Կրկնագիր մագաղաթ: Հուշեր» (1995) հուշագրության:

ՎԻԴԱԼ Ֆեռնան (1862–1929), ֆրանսիացի թերապևտ և վարակաբան: Հաստատել է հետծննդյան վարակ. բարդությունների ժամանակ ստրեպտոկոկների դերը, մշակել է որովայն. տիֆի շճարան. ախտորոշման մեթոդ (Վ.-ի ռեակցիա), ցույց է տվել ***անաֆիլաքսիայի*** և ***իդիոսինկրազիայի*** միջև տարբերությունը: Երիկամաբանության մեջ ֆունկցիոնալ ուղղության հիմնադիրներից է:

ՎԻԴԱԼ ԴԵ ԼԱ ԲԼԱՇ (Vidal de la Blache) Պոլ (1845–1918), ֆրանսիացի աշխարհագետ, «մարդու աշխարհագրություն» ֆրանս. աշխարհագր. դպրոցի հիմնադիրը: Գլխ. աշխ-ը՝ «Մարդու աշխարհագրության սկզբունքները» (հրտ.՝ 1922):

ՎԻԴԵՄԱՆ (Wiedemann) Գուստավ Հենրիխ (1826–1899), գերմանացի ֆիզիկոս: Ս.Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1883): Աշխ-ները վերաբերում են էլեկտրականությանը և մագնիսականությանը, ջերմ. երևույթների ֆիզիկային, օպտիկային: Վիդեման-Ֆրանցի օրենքի հեղինակներից (1853): Հայտնաբերել է (1858) հետագայում իր անունով կոչված Վ.-ի էֆեկտը (ֆեռոմագնիս. ձողի պտտման մասին):

ՎԻԴԻԿՈՆ (< լատ. videre – նայել, տեսնել և հուն. eixo – պատկեր), լուսահաղորդիչ թիրախով հաղորդիչ հեռուստատես. խողովակ: Լույսի ազդեցությամբ հաղորդման օբյեկտից թիրախի վրա գոյանում է օբյեկտի պատկերին համապատասխանող լիցքերի բաշխում (պոտենցիալ ռելիեֆ): Թիրախից լիցքերի տեղափոխությունը կատարում է մագնիս. և էլեկտրաստատիկ. դաշտերով կառավարվող էլեկտրոն. փունջը: Կիրառվում է հիմնականում արդ. հեռուստատեսության տեղակայանքներում:

ՎԻԵՅՐԱ (Vieira) Ժուան Բեռնարդու (1939–2009), Գվինեա-Բիսաուի նախագահ՝ 1994–99 և 2005–09-ին, գեն.: 1981-ից՝ Գվինեայի և Կաբո-Վերդեի Աֆրիկայի անկախության կուս-յան ԿԿ գլխ. քարտուղար: 1978–82-ին՝ վարչապետ, 1984–94-ին՝ Պետ. խորհրդի նախագահ:

ՎԻԵՆՆԱ (Wien), Ավստրիայի մայրաքաղաքը (1918-ից), ք-նվինգստ Դանուբի ափին: Բն.՝ 1,87 մլն (արվարձաններով՝ ավելի քան 2,6 մլն, 2017): Ունի օդանավակայան և մետրոպոլիտեն: Կան մեքենաշին. (էլեկտրատեխ., տրանսպորտ., հաստոցաշին. և սարքաշին.), քիմիա-դեղագործ., սննդի, թեթև արդ-յան և այլ ձեռն-ներ: Ունի դաշն. երկրամասի կարգավիճակ: Վ.-ում են ՅՈՒՆԻԴՕ-ի և ՄԱԳԱՏԷ-ի գրասենյակները: Գործում են Օպեր. թատրոնը, Բուրգթատրոնը, Արվ-ի պատմության թանգարանը, Ի. Հայդնի, Վ. Ա. Մոցարտի, Ֆ. Շուբերտի, Ի. Շտրաուսի տուն-թանգարանները ևն: Ճարտ. հուշարձաններից են Սբ Ստեֆանի տաճարը (XIII–XIV դդ.), Սանկտ-Մարիամ-Գեշտադե գոթ. եկեղեցին (1330–1414), Հաբսբուրգների նախկին նստավայրը՝ Հոֆբուրգը (հիմն.՝ 1260), բարոկկո ոճի պալատները: Բարոկկոյի շրջանում են ստեղծվել դարավանդ. զբոսայգիները, Ներքին (1714–16) և Վերին (1721–22) Բելվեդեր, Շվարցենբերգ (1697–1704) պալատները և Սբ Կառլ Բոռոմեի եկեղեցին (1716–39): Պատմ. կենտրոնը, Շյոնբրունի պալատն ու զբոսայգիները Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում են: Վ. հնում եղել է կելտ. բնակավայր: I դ.-ում դարձել է հռոմ. ռազմ. ճամբար՝ Վինդոբոնա անունով: XII դ.-ից Ավստրիացի հերցոգների նստավայրն էր: 1282-ից անցել է Հաբսբուրգներին, եղել նրանց պետության մայրաքաղաքը (Ավստրո-Հունգարիայինը՝ 1867–1918-ին):

Վ.-ում հայտնված առաջին հայերն առևտրականներ էին, որոնք Ավստրիա էին բերում Պարսկաստանի մետաքսը, Հնդկաստանի թանկարժեք քարերը, համեմունքներ և այլ ապրանքներ: Սակայն հայկ. համայնքը կազմավորվել է XIX դ.-ի սկզբին, երբ 1811-ին Տրիեստից Վ. են տեղափոխվել ***Մխիթարյան միաբանության*** առանձին անդամներ: XIX դ.-ի սկզբին Մխիթարյանները Վ.-ում բացել են գիշերօթիկ դպրոց հայ երեխաների համար, հիմնել տպարան, հրատարակել մամուլ («Ծանօթութիւնք վաճառագիտութեան», 1819, «Եւրոպա», «Հանդէս ամսօրեայ» ևն): XIX դ.-ի վերջին և 1915-ի եղեռնից հետո Վ.-ում հայերի թիվն աճել է: Այժմ (1985) Վ.-ում բնակվում է շուրջ 1300 հայ: Գործում են ՀԲԸՄ Վ.-ի մասնաճյուղը (1910-ից), Սբ Փրկիչ եկեղեցին (1918-ից), Ավստրո-հայկ. մշակութ. միությունը (1976-ից), Ավստրիահայ ուս. միությունը ևն:

ՎԻԵՆՆԱՅԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ 1814–15, միջազգ. խորհրդաժողով. ավարտել է եվրոպ. տերությունների դաշինքների պատերազմները նապոլեոնյան Ֆրանսիայի դեմ: Տեղի է ունեցել Վիեննայում 1814-ի սեպտ–1815-ի հունիսը: Վ. խ-ին մասնակցել է եվրոպ. բոլոր պետությունների (բացի Թուրքիայից) 216 ներկայացուցիչ: Վ. խ-ի կարևորագույն խնդիրը Ֆրանս. մեծ հեղ-յամբ և նապոլեոնյան պատերազմների ժամանակ վերացված ավատ. միապետ. կարգերի վերականգնումն էր, Եվրոպայում նոր պետ. սահմանների հաստատումը ևն: Խորհրդաժողովի նիստերի ժամանակ Էլբա կղզի աքսորված Նապոլեոնը 1815-ի մարտի 1-ին աննպասելիորեն ափ է իջել Ֆրանսիայում և սկսել հաղթարշավով առաջանալ դեպի Փարիզ (տես «***Հարյուր օր***»): ***Վաթերլոոյի ճակատամարտից*** մի քանի օր առաջ՝ 1815-ի հունիսի 9-ին, Ռուսաստանը, Պրուսիան, Ավստրիան, Անգլիան, Ֆրանսիան, Իսպանիան, Շվեդիան և Պորտուգալիան ստորագրել են Վ. խ-ի գլխ. եզրափակիչ պայմանագիրը, որով Ֆրանսիան զրկվել է տարածք. բոլոր նվաճումներից: Բելգիան և Հոլանդիան միավորվել են Նիդեռլ. թագավորության մեջ: Նորվեգիան անջատվել է Դանիայից և միացել Շվեդիային: Դանիան ստացել է Շլեզվիգը և գերմ. Հոլշտայնը: Վ.խ. Շվեյց. դաշնությունը հռչակել է չեզոք պետություն: Լեհաստանը բաժանվել է Ռուսաս-

տանի, Ավստրիայի և Պրուսիայի միջև: Կրակովը հռչակվել է «անկախ քաղաք»: Գերմանիան մնացել է 38 ինքնուրույն պետություններից բաղկացած երկիր: Գերմ. պետություններից և Ավստր. տիրույթների մի մասից ստեղծվել է Գերմ. միությունը՝ Ավստրիայի գերիշխանության ներքո: Ապենինյան թ–կղզում պահպանվել են 8 իտալ. պետություններ: Իտալիայի հվ–արմ–ում վերականգնվել է Սարդին. թագավորությունը (Պիեմոնտը). նրան միացվել են Սավոյան ու Նիցցան: Պրուսիային են միացվել Պոզնանը, Գդանսկը (Դանցիգ) և Տորունը, Սաքսոնիայի տարածքի գրեթե կեսը, Հռենոսյան մարզը և Վեստֆալիան: Ավստրիան, լեհ. հողերից բացի, ստացել է Արմ. Ուկրաինան (Գալիցիան) և Տեռնոպոլի շրջանը, հաստատվել է նաև իտալ. հողերում (նրան են անցել Լոմբարդիան և նախկին Վենետիկի հանրապետության տարածքը): Ռուսաստանին են անցել նախկին Վարշավայի դքսության մեծ մասը («Լեհական թագավորություն»), Ֆինլանդիան և Բեսարաբիան: Անգլիան պահպանել է Հոլանդիայից ու Ֆրանսիայից զավթած գաղութների ու ծով. հենակետերի մի մասը (Մալթան՝ Միջերկր. ծովում, Հոնիական կղզիները, Կապի գաղութը՝ Աֆրիկայի հվ–ում, և Յեյլոն կղզին): Վ. կ. ամրապնդել է նապոլեոնյան պատերազմների վերջին ստեղծված ուժերի նոր հարաբերակցությունը, ինչպես նաև միջազգ. հարաբերություններում Ռուսաստանի ու Մեծ Բրիտանիայի առաջատար դերը: Որպես Վ. խ–ի պայմանագրի լրացուցիչ ակտ՝ 1815–ի սեպտ. 26–ին ստեղծվել է *Սրբազան դաշինքը*:

ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Եվրոպայի խոշորագույն և հնագույն համալսարաններից, գերմանախոս տարածքի 1–ին համալսարանը: Հիմնադրվել է 1365–ին Ավստրիայում: 2016–ին ուներ ավելի քան 92 հզ. ուսանող: Վ. հ–ի շրջանավարտներից են Նորելյան մրցանակակիրներ Ռ. Բարանին, Յ. Վագներ–Յաուեգգը, Հ. Ֆիշերը, Կ. Լանդշտայները, Է. Շրյոդինգերը, Վ. Ֆրանց Հեսսը, Օ. Լյովին, Ֆ. Ֆոն Հայեկը, Կ. Լորենցը: 1902–38–ին բժշկ. ֆակ–ում աշխատել է Զ. *Ֆրեյդը*:

ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սկզբնավորել են մի խումբ Մխիթարյաններ, որոնք, 1773–ին թողնելով Վենետիկը, հաստատվել են նախ Տրիեստում (տես *Տրիեստի հայկական տպագրություն*), ապա 1811–ին տեղափոխվել են Վիեննա, հիմնադրել տպարան, 1812–ին տպագրել 1–ին գիրքը: Մինչև XIX դ–ի վերջն այստեղ տպագրվել է շուրջ 500 անուն գիրք, այդ թվում՝ հայագիտ. արժեքավոր երկեր, բառարաններ, նշանավոր հայ և օտարազգի հայագետների աշխ–ներ, նաև պարբ–ներ, թղթադրամներ ևն: Տպարանը գործել է մինչև 1998–ը:

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԱՍԵՆԱԴԱՐԱՆ Մխիթարյան միաբանության, հիմնադրվել է 1811–ին: Հավաքածուները հարստացել են հատկապես XIX դ–ի 2–րդ կեսին, երբ միաբանությունը դարձել է ուս. և հայագիտ. կենտրոն: Վ. մ–ում պահվում է ավելի քան 2,5 հզ. ձեռագիր մատյան: 1895–ին տպագրվել է Վ. մ–ի ձեռագրացուցակի 1–ին հատորը (կազմ.՝ Հակոբոս *Տաշյան*), 1964–ին՝ 2–րդը (կազմ.՝ Համազասպ *Ոսկյան*), 1983–ին՝ 3–րդը (կազմ.՝ Օգոստինոս *Մևքույան*): Ունի նաև հայ. և օտարալեզու գրքերի և պարբ–ների հարուստ հավաքածու:

ՎԻԵՆՆԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՕՊԵՐԱ (Wiener Staatsoper, մինչև 1918–ը՝ Վիեննայի պալատ. օպերա), աշխարհի նշանավոր օպեր. թատրոններից, Ավստրիայի երաժշտ. մշակույթի կենտրոն: Հիմնադրվել է XVII դ–ի կեսին: Օպերայում հանդես են եկել Եվրոպայի լավագույն երգիչներ և դիրիժորներ (Հ. Ռիխտեր, Կ. Կրաուս, Ռ. Շտրաուս, Բ. Վալտեր, Օ. Կլեմպերեր և ուր.):

ՎԻԵՏ (Viète) Ֆրանսուա (1540–1603), ֆրանսիացի մաթեմատիկոս: Աշակել է գրեթե ողջ տարր. մաթեմատիկան: Հայտնի են «Վ–ի բանաձևերը», որոնք նկարագրում են հանրահաշվ. հավասարման արմատների և գործակիցների միջև եղած կախումը: Հավասարումների համար ներմուծել է տառային նշանակումներ:

ՎԻԵՏԻ ԹԵՈՐԵՄ, Ֆ. *Վիետի* սահմանած թեորեմ. բերված քառակուսի հավասարման արմատների գումարը հավասար է x–ի գործակցին՝ հակառակ նշանով, իսկ արտադրյալը՝ ազատ անդամին:

ՎԻԵՏՆԱՄ (Viêt Nam), **Վիետնամի Սոցիալիստական Հանրապետություն,** պետություն Հվ–արլ. Ասիայում: Սահմանակից է Չինաստանին, Լաոսին և Կամբոջային: Տարածքը՝ 329,3 հզ. *կմ²,* բն.՝ 88,6 մլն (2013): Մայրաքաղաքը՝ *Հանոյ*: Պետ. լեզուն՝ վիետնամ.: Կառավարման ձևը՝ հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Բնակչության մեծ մասը բուդդայական է: Բաժանված է 59 վարչ. պրովինցիաների և 5 կենտր. ենթակայության քաղաքների: Անդամակցում է ՄԱԿ–ին, ԱՍԵԱՆ–ին, ԱՀԿ–ին ևն: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 2,9 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է նավթ, ձուկ, կաուչուկ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ վիետնամ. դոնգ:

Հնագույն վիետնամ. պետությունը եղել է Վանլանգը, որին հաջորդել են Առլակ և Նամվիետ պետությունները: Վերջիններիս մ. թ. ա. II դ–ում նվաճել է Չինաստանը: Մ. թ. X դ–ում ազատագր. պայքարի շնորհիվ վիետնամ. ժողդ–ն ստեղծել է անկախ պետականություն: XI–XIV դդ–ում ձևավորվել է Դայվիետ ավատատիր. կենտրոնացված պետություն: Վերջինս XVII դ–ում բաժանվել է 2 տոհմ. տիրույթների, որոնց միջև սկսվել է երկպառակտչ. պատերազմ: 1802–ին Նգուենների հարստությունը վերցրել է երկրի իշխանությունը և կառավարել մինչև 1945–ը: «Վ.» անունը երկրին տրվել է 1804–ին: XIX դ–ի 1–ին կեսին Վ. բացարձակ միապետություն էր: 1858–84–ին այն գաղութացրել են ֆրանսիացիները: ԵՀՊ–ի ժամանակ երկիրը նվաճել են ճապոնացիները: 1941–ին ստեղծվել է ազգ–ազատագր. միասն. ճակատ՝ պայքարելու ֆրանս. գաղութարարների և ճապոն. զավթիչների դեմ: 1945–ի հեղ–յունը վերջ է դրել գաղութ. վարչակարգին: Նույն տարում հռչակվել է Վ–ի Դեմոկրատ. Հանրապետությունը: 1956–ին ֆրանս. զորքերը դուրս են բերվել երկրից: Վ. դարձել է ԽՍՀՄ–ի և ԱՄՆ–ի շահերի բախման թատերաբեմ: Հս. Վ.–ում հաստատվել են սոց. կարգեր, իսկ Հվ–ում հռչակվել է Վ–ի Հանրապետությունը: Վ–ի համար ԽՍՀՄ–ի և ԱՄՆ–ի պայքարը 1965–ին վերածվել է բացահայտ պատերազմի: Հակամարտությունը շարունակվել է մինչև Հվ. Վ–ի վարչակարգի անկումը: 1976–ին տեղի են ունեցել Վ–ի ԱԺ–ի ընդհ. ընտրություններ, երկիրը միավորվել է մեկ պետության մեջ: 1992–ին ընդունվել է նոր սահմանադրություն: Երկրում պահպանվում են կոմ. կուս–յան մոնոպոլ իշխանությունը, մարքսիզմ–լենինիզմի պաշտոն. գաղափարախոսությունը, սոց. սեփականության ձևը, պետ. շահի գերակայությունը:

ՎԻԵՏՆԱՄԵՐԵՆ, *վիետնամցիների* լեզուն, Վիետնամի պետ. լեզուն: Պատկանում է ավստրալաասիական լեզվաընտանիքին: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՎԻԵՏՆԱՄԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, հիմնադրվել է 1918–ին Հանոյ քում: Վերակազմավորվել է 1956–ին: Մինչև 1993–ը՝ Հանոյի համալսարան: 2015–ին ուներ շուրջ 10 հզ. ուսանող:

ՎԻԵՏՆԱՄՑԻՆԵՐ (ինքնանվանումը՝ վիետ), ժողդ., Վիետնամի հիմն. բնակչությունը: Ընդհ. թիվը՝ շուրջ 73,5 մլն (2006, 70,8 մլն–ը՝ Վիետնամում): Ապրում են նաև Կամբոջայում, Թաիլանդում, Լաոսում, ԱՄՆ–ում, Կանադայում, Ավստրալիայում, ՌԴ–ում և այլուր: Լեզուն՝ վիետնամերեն: Հավատացյալները հիմնականում բուդդայական, դաոսականներ և կոնֆուցիական են:

ՎԻԶԱ (լատ.՝ visus – տեսնված), 1. որևէ փաստաթղթի կամ ակտի նշագրություն, որը հաստատում է դրա իսկությունը կամ ուժ տալիս դրան: 2. Պաշտոն. նշագրում անձնագրում տվյալ երկիր մուտքի թույլտվության, այնտեղով անցնելու և ելքի մասին:

ՎԻԶԲՈՐ (Վիզբորաս) Յուրի Իոսիֆովիչ (1934–1984), լիտվացի ռուսագիր բանաստեղծ, դերասան, սցենարիստ: Երգերի հեղինակ–կատարող: Նկարահանվել է 1967–ից: Հեղինակ է «Չելյուսկինյան էպոպեա» (1974), «Դեպի բևեռ» (1980) վավերագր., նաև «Վիշապի տարի» (1982) գեղ. կինոնկարների սցենարների ևն: Խաղացել է «Հուլիսյան անձրև», «Հատուցում», «Սկիզբ», «Դու և ես» գեղ., «Գարնան տասնյոթ ակնթարթ» հեռուստատես. և այլ ֆիլմերում:

ՎԻԶԵԻ ԿՂԶԻ, ցածրադիր կղզի Կարայի ծովում (ՌԴ): Տարածքը՝ 288 *կմ²*: Տարածված է տունդր. բուսականություն: Հայտնագործել է «Գեորգի Սեդով» նավի արշավախումբը 1930–ին և կոչել բևեռախույզ Վ. Յ. Վիզեի (1886–1954) անունով, որը տեսականորեն կանխատեսել է կղզու գոյությունը: 1945–ից գործում է բևեռ. կայան:

ՎԻԶԵԼ (Wiesel) Էլի (1928–2016), ամերիկացի հրեա գրող: 1956–ից՝ ԱՄՆ–ում: Հեղինակ է «Աղքատը Երուսաղեմից» (1968), «Բզկտված հրեա բանաստեղծի Ամերտարանը», (1980), «Մոռացում» (1992), «Անխոնջների ժամանակը» (2003) և այլ վեպերի, «Բոլոր գետերը հոսում են դեպի ծով» (1995), «Իսկ ծովը երբեք չի լցվում» (1999) հուշագրությունների:

Խաղաղության Նորելյան մրց. (1986):

ՎԻԶԵԼ, Վիսել (Wiesel), Տորստեն Նիլս (ծ. 1924), շվեդ նյարդակենսաբան և նյարդաֆիզիոլոգ: 1955–ից՝ ԱՄՆ–ում: Բացահայտել է (Դ. Հ. *Հյուբելի* հետ) գլխուղեղի արտաքին ազդակներն ընկալող նեյրոն. կառուցվածքներում տեղեկույթների մշակման սկզբունքները:

Նորելյան մրց. (1981, Դ. Հ. Հյուբելի հետ):

ՎԻԹԵՐ (Gazelle), սնամեջ եղջերավորների ընտանիքի երկկճղակավոր կենդանիների սեռ: Հայտնի է 12–16 տեսակ՝ Հս. Աֆրիկայում և Ասիայում: Այսրկովկասի հվ–արլ–ում ապրում է ջեյրանը: Եղել է որսակենդանի (միսը, կաշին): Թվաքանակը կրճատվում է: 15 տեսակ գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՎԻԹՎՈՐԹ, Ուիթուորդ (Whitworth), Ջոզեֆ (1803–1887), անգլիացի ճարտարագետ և արդյունաբերող: Առաջարկել է (1841) պտուտակային պարուրակի պրոֆիլը (Վ–ի պարուրակ): Ստեղծել է մեծ ճշգրտության չափիչ մեքենա (1851), մշակել պարուրակի և տրամաչափերի չափորոշման համակարգ:

ՎԻԺՈՒՄ, աբորտ (լատ.՝ abortus), **մարդու**, հղիության ընդհատումը մինչև 28 շաբաթական ժամկետում (այսինքն՝ մինչև կենսունակ պտղի հնարավոր ծննդյան պահը): Ինքնաբեր Վ. կարող է առաջանալ սեռ. օրգանների թերզարգացման, մոր և պտղի որոշ հիվանդությունների դեպքերում: Արհեստ. Վ. կատարում են մինչև 12 շաբաթական ժամկետներում՝ կնոջ ցանկությամբ, սոցիալ. և բժշկ. ցուցումներով՝ նաև ավելի ուշ: ՀՀ օրենքով սահմանված է քր. պատասխանատվություն՝ համապատասխան մասնագիտ. կրթություն չունեցող անձանց՝ Վ. կատարելու համար: Կենդանիների Վ. արական և իգական սեռ. բջիջների անլիարժեքության, որոշ վարակիչ կամ մակաբուծ. հիվանդությունների, նաև կերակրման ու հղի կենդանիների շահագործման կանոնների խանգարման հետևանք է:

ՎԻԼԱ (Vila), **Պորտ Վիլա,** Վանուատու պետության մայրաքաղաքն Էֆատե (Նոր Հեբրիդներ) կղզում, նվիճգատ Խաղաղ օվկ–ի ափին: Բն.՝ 44 հզ. (2009): Միջազգ. ֆին. կենտրոն է:

ՎԻԼԱ–ԼՈԲՈՍ (Villa–Lobos) Էյտոր (1887–1959), բրազիլացի կոմպոզիտոր, դիրիժոր, բանահավաք, հաս. գործիչ: Բրազիլ. երաժշտ. ակադ–ի (1945), երաժշտ. դպրոցների, երգչախմբերի, ազգ. կոնսերվատորիայի հիմնադիրը: Մշակել է երաժշտ. դաստիարակության համակարգ, հավաքել և գրառել բրազիլ. երաժշտ. բանահյուսության երկեր: Հեղինակ է օպերաների, բալետների, սիմֆոնիաների, «Բրազիլական բախիաներ» սյուիտների շարքի (1930–45), «Շոռո»–նեբրի (1920–29) և այլ գործերի:

ՎԻԼԱՅԵԹ (թուրք.՝ vilayet, արաբ.՝ վալիյա – կառավարել), վտմ Թուրքիայում, Հս. Աֆրիկայի, Մերձ. և Միջին Արևելքի երկրներում: Թուրքիայի տարածքը Վ–ների է բաժանվել 1866–ին՝ 1864–ի օրենքի հիման վրա (մինչ այդ վտմ էր **էյալեթը**): XIX դ–ի վերջ–XX դ–ի սկզբին Արմ. Հայաստանի տարածքն ընդգրկված էր Վանի, Էրզրումի, Սեբաստիայի, Բիթլիսի, Խարբերդի և Տրապիզոնի Վ–ների մեջ, Կիլիկիան՝ Ադանայի: 2014–ին Թուրքիայում կար 81 Վ. կամ իլ: Կառավարում են վալիները (նահանգապետ):

ՎԻԼԱՆԴ (Wieland) Հենրիխ (1877–1957), գերմանացի քիմիկոս–օրգանիկ և կենսաքիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ արտ. թղթ. անդամ (1929): Առաջարկել է ապահիդրման տեսությունը, որը բացատրում է օքսիդացման, այդ թվում՝ կենսբ. օքսիդացման ռեակցիաների մեխանիզմը: Նոբելյան մրց. (1927):

ՎԻԼԱՐԻ ԷՖԵԿՏ, մագնիսաառաձգական էֆեկտ, մարմնի մագնիսացվածության փոփոխումը՝ նրա մեխ. ձևափոխման դեպքում (***մագնիսաստրիկցիայի*** հակառակ էֆեկտը): Հայտնագործել է իտալացի ֆիզիկոս Է. Վիլարին (E. Villari) 1865–ին: Պայմանավորված է մեխ. լարվածության ազդեցությամբ ֆեռոմագնիսի դոմենային կառուցվածքի փոփոխությամբ, ինչով և պայմանավորված է այդ կառուցվածքը:

ՎԻԼԵՄՍՏԱԴ (Willemstad), ք–նվինգստ Կյուրասաո կղզում, Նիդեռլ. Անտիլյան կղզիների (Նիդեռլանդների տիրույթ) վարչ. կենտրոնը: Բն.՝ 150 հզ. (2013): Նավթի (բերվում է Վենեսուելայից) վերամշակման կենտրոն է:

ՎԻԼԼԱ ԱԴՐԻԱՆԱ (Villa Adriana, Villa Hadriana), պալատապուրակ. համալիր (մոտ 120 *հա*) Տիվոլիում, Հռոմից 25 *կմ* հեռու, Ադրիան կայսեր ամառ. նստավայրը: 118–134–ին ընդարձակվել և վերակառուցվել է: II դ–ի կեսից անկում է ապրել, ապա կործանվել: Քանդակների և ձեռագրերի հավաքածուն կողոպտվել է (մի մասը IV դ–ի սկզբին տեղափոխվել է Կ. Պոլիս): Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՎԻԼԼԱ Դ'ԷՍՏԵ (Villa d'Este), պարտեզապուրակ. արվ–ի ճարտ. հուշարձան, թանգարան Տիվոլիում (Իտալիա): Կառուցվել է կարդինալ Իպպոլիտո դ'Էստեի պատվերով (1550–72, ճարտ.՝ Պ. Լիգորիո): Ընդգրկում է բազմաթիվ շատրվաններ և քանդակներ (նաև անտիկ՝ Վիլլա Ադրիանայից): Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՎԻԼԼԱ ՋՈՒԼԻԱ (Villa Giulia), ճարտ. հուշարձան և թանգարան Հռոմում: Կառուցվել է որպես Հուլիոս III պապի նստավայր (1551–55, ճարտ–ներ՝ Ջ. դա Վինիոլա, Բ. Ամմանատի, Ջ. Վազարի): Իտալ. մանրիստ. ոճի լավագույն համալիրներից. բնորոշ է արտաքին խիստ նկարագրի և ներքին բաց տարածության հակադրությունը ևն: Այժմ՝ էտրուսկ. արվ–ի թանգարան (ամենամեծ հավաքածուն Իտալիայում):

ՎԻԼԼԱ ՖԱՐՆԵԶԵ, Ֆառնեզեի պալատ (Villa Farnese, Palazzo Farnese), ճարտ. հուշարձան և թանգարան Իտալիայի Կապրարոլա բնակավայրում: Կառուցվել է որպես ամրոց (1521–ից, ճարտ.՝ Ա. դա Սանգալլո Կրտսեր) կարդինալ Ֆառնեզեի (հետագայում՝ Պողոս III պապ) համար: 1530–ական թթ–ին (շին–յան ղեկ.՝ Բ. Պեռուցցի) և 1556–83–ին (շին–յան ղեկ.՝ Ջ. դա Վինիոլա) վերափոխվել է պալատի: Որմնանկարների հեղինակներն են Թ. և Ֆ. Ցուկկարիները, Յ. Բերտոյյան և ուր.:

ՎԻԼԼԻԶԻ Ուիլլիս (Willisius, Villis), Թոմաս (1621–1675), բրիտանացի բժիշկ, անատոմ: Աշխ–ները վերաբերում են գլխուղեղի և նրա անոթների անատոմիային ու ֆիզիոլոգիային: Առաջինն է նկարագրել գլխուղեղի հիմի զարկերակները («վիլլիզյան շրջան»):

ՎԻԼԼՈՏ (Villote) Յակոբ, **Վիլլոդ Հակոբ** (1656–1743), ֆրանսիացի հայագետ: 12 տարի ապրել է Թեհրանում, այցելել է հայաբնակ մի շարք վայրեր, ուսումնասիրել հայերի և այլ տեղաբնիկների բարքերն ու սովորույթները: «Հիսուսյան ընկերության միսիոների ճանապարհորդությունը...» (1730) աշխ–յան մեջ արժեքավոր տեղեկություններ է տալիս Հայաստանի աշխարհագրության, երկրագործության, առևտր. և քաղ. հարաբերությունների, հայերի կենցաղի մասին: Հեղինակ է նաև «Բառգիրք հայկազեան լեզուի» («Բառարան լատին–հայ», 1714) երկլեզվյան արժեքավոր բառարանի (մոտ 26 հզ. բառահողված), որին կցված է «Հայոց լեզվի ուրվագիծ» ներածությունը, առանձին գլխով ներկայացված է հայ կաթողիկոսների և թագավորների ժամանակագրությունը:

ՎԻԼՀԵԼՄ I (Wilhelm) **Հոհենցոլեռն** (1797–1888), Պրուսիայի թագավոր՝ 1861–ից և Գերմանիայի կայսր՝ 1871–ից: ***Վիլհելմ II Հոհենցոլեռնի*** պապը: Վ. I–ի ժամանակ Պրուսիայի, ապա՝ Գերմ. կայսրության փաստացի ղեկ–ը կանցլեր Օ. ***Բիսմարկն*** էր:

ՎԻԼՀԵԼՄ I Նվաճող (William the Conqueror, մոտ 1027–1087), Անգլիայի թագավոր՝ 1066–ից՝ Նորմանդ. հարստությունից: 1035–ից՝ Նորմանդիայի դուքս: Վ. I նորմանդացի, ֆրանսիացի և իտալացի ավատատերերի զորքերով 1066–ին ափ է իջել Անգլիայում և, հոկտ. 14–ին Հաստինգսի ճակատամարտում ջախջախելով անգլոսաքսոն. թագավոր Հարոլդ II–ի զորքերը, դարձել է Անգլիայի թագավոր: Նրա օրոք հաստատվել է բոլոր ավատատերհողատերերի վասալ. կախվածությունը թագավորից:

ՎԻԼՀԵԼՄ I (Վիլլեմ, Willem) Ֆրեդերիկ (1772–1843), Օրանի թագաժառանգ, Նասաուի կոմս, Նիդեռլանդների թագավոր՝ 1815–40–ին: ***Վիլհելմ II*** Ֆրեդերիկ Գեորգ Լոդեվեյկի հայրը: ***Վիեննայի խորհրդաժողովի*** (1814–15) վճռով հայտարարվել է միավորված հոլանդա–բելգ. նիդեռլ. թագավորության թագավոր և Լյուքսեմբուրգի մեծ դուքս: Փորձել է ճնշել 1830–ի բելգ. հեղ–յունը և մինչև 1839–ը չի ճանաչել Բելգիայի անկախությունը: Վ. I 1840–ին հրաժարվել է գահից՝ հօգուտ իր որդու:

ՎԻԼՀԵԼՄ II Հոհենցոլեռն (1859–1941), Գերմանիայի կայսր և Պրուսիայի թագավոր՝ 1888–1918–ին: ***Վիլհելմ I Հոհենցոլեռնի*** թոռը: Ակտիվորեն նպաստել է ԱՀՊ–ի սանձազերծմանը: Վարել է շեշտված հակահայկ. քաղ–յուն, աջակցել է երիտթուրքերին՝ իրականացնելու Մեծ եղեռնը: 1918–ի նոյեմբ. 9–ին Գերմանիայում սկսված հեղ–յան հետևանքով գահընկեց է արվել, փախել Հոլանդիա և 1918–ի նոյեմբ. 28–ին հրաժարվել գահից:

ՎԻԼՀԵԼՄ II (Վիլլեմ) Ֆրեդերիկ Գեորգ Լոդեվեյկ (1792–1849), Նիդեռլանդների թագավոր՝ 1840–49–ին, Լյուքսեմբուրգի մեծ դուքս: ***Վիլհելմ I*** Ֆրեդերիկի որդին, ***Վիլհելմ III*** Ալեքսանդր Պաուլ Ֆրեդերիկ Լոդեվեյկի հայրը: 1815–ին ***Վաթերլոոյի ճակատամարտում*** գլխավորել է նիդեռլ. զորքերը: 1848–ին կատարել է լիբերալ բարեփոխումներ:

ՎԻԼՀԵԼՄ II–Ի ԵՐԿԻՐ (Wilhelm II Land), Արլ. Անտարկտիդայի տարածքի մաս՝ արլ. երկայն–յան 88°–ի և 92°–ի միջև: Սառցե շերտի հաստ.՝ մինչև 2000 *մ*: Հայտնագործել է Է. Դրիգալսկու գերմ. արշավախումբը 1902–ին և կոչել Գերմանիայի կայսեր անունով:

ՎԻԼՀԵԼՄ III (ճիշտը՝ Վիլլեմ, Willem) Ալեքսանդր Պաուլ Ֆրեդերիկ Լոդեվեյկ (1817–1890), Նիդեռլանդների թագավոր՝ 1849–90–ին: Լյուքսեմբուրգի մեծ դուքս: ***Վիլհելմ II*** Ֆրեդերիկ Գեորգ Լոդեվեյկի որդին: Հարկադրված է եղել հետևել սահմանադրությանը և մի շարք պետ. հարցերի լուծումը թողնել պառլամենտին:

ՎԻԼՀԵԼՄ III Օրանացի (1650–1702), Անգլիայի թագավոր՝ 1689–ից (1689–94–

ին իշխել է կնոջ՝ Մարիա II Ստյուարտի հետ): 1674–1702-ին՝ Նիդեռլանդների շտատհալտեր (կառավարիչ): Վ. III-ին և Մարիային Անգլիա են հրավիրել *վիգերը «Պանծալի հեղափոխություն»*-ից հետո:

ՎԻԼՀԵԼՄ ՏԵԼԼ, շվեյցար. ժող. առասպելի հերոս: Արտացոլել է շվեյցարացիների պայքարն ավստրիացի Հաբսբուրգների տիրապետության դեմ XIV դ.-ում:

ՎԻԼՀԵԼՄԻ (Wilhelmy) Լյուդվիգ Ֆերդինանդ (1812–1864), գերմանացի քիմիկոս: Ուսումնասիրել է եղեգնաշաքարի փոխարկումները թթուների ազդեցությամբ, ռեակցիաների արագության համար առաջարկել է (1850) մաթ. արտահայտություն, մշակել է քիմ. կինետիկայի հիմունքները:

ՎԻԼՅՈՒՅ, գետ ՌԴ-ում՝ Արլ. Սիբիրում, Լենայի ամենախոշոր ձախ վտակը: Երկ.՝ 2650 *կմ*, ավազանը՝ 454 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1480 *մ*^{3}/*վ*: Հոսում է Միջինսիբիր. սարահարթով, ստորին հոսանքում՝ Կենտրոնայակուտ. հարթավայրով: Նավարկելի է գետաբերանից 1170 *կմ* (ջրամբարից ջուր բաց թողնելու դեպքում՝ մինչև Չեռնիշևսկի ավանը): Գլխ. նվինգստ-ները՝ Վիլյույսկ, Նյուրբա, Չեռնիշևսկի: Գործում է ջրէկ:

ՎԻԼՆՅՈՒՍ (Vilnius), Լիտվայի մայրաքաղաքը՝ Նյարիս գետի ափին: Բն.՝ 543 հզ. (2010): Երկթղ. հանգույց է: Ունի օդանավակայան: Կան մեքենաշին. և մետաղամշակման, քիմ., փայտամշակման, թեթև, սննդի արդ-յան և այլ ձեռն-ներ: Գործում են ԳԱ, բուհեր, թատրոններ, Ազգ. Լիտվ. գեղարվ-ի և այլ թանգարաններ: Հիմնադրվել է շուրջ 1000-ին, 1323-ից Լիտվ. Մեծ իշխանության մայրաքաղաքն էր: 1795-ին անցել է Ռուսաստանին: 1920–39-ին եղել է Լեհաստանի կազմում: 1940-ից՝ Լիտվ. ԽՍՀ մայրաքաղաքը: Կան հին ամրոցի ավերակներ (XIV–XV դդ.): Հին քաղաքում շատ են XVII–XVIII դդ-ի շինությունները: Ճարտ. հուշարձաններից են Սբ Աննա (XVII դ.), Սբ Պետրոսի և Պողոսի (XVII դ.) եկեղեցիները, մայր տաճարը (1783–1803) և Ռատուշան (XVIII դ.): Պատմ. կենտրոնը Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՎԻԼՆՅՈՒՍԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Լիտվայի հնագույն համալսարանը: Հիմնադրվել է 1579-ին՝ որպես ակադեմ. համալսարան: 1832-ին փակվել է, նրա հիմքի վրա ստեղծվել են բժշկավիրաբուժ. (1842-ից՝ Կիևում) և հոգևոր (1842-ից՝ Ս. Պետերբուրգում) ակադ-ները: Լեհ. բռնազավթումից հետո՝ 1919–39-ին գործել է որպես լեհ. համալսարան, 1939-ից (Վիլնյուսը Լիտվային վերադարձնելուց հետո)՝ ազգ. համալսարան: 2015-ին ուներ շուրջ 21 հզ. ուսանող:

ՎԻԼՇՏԵՏԵՐ (Willstätter) Ռիխարդ Մարտին (1872–1942), գերմանացի քիմիկոս և կենսաքիմիկոս: ՌԳԱ արտ. թղթ. (1923), ԽՍՀՄ ԳԱ արտ. պատվ. (1929) անդամ: Առաջինն է ուսումնասիրել բուս. գունակները (քլորոֆիլ, անտոցիաններ): Աշխ-ները վերաբերում են ալկալոիդներին, խմորիչներին և լուսասինթեզին:

Նոբելյան մրց. (1915):

ՎԻԼՍՈՆ, Ուիլսոն (Wilson), Թոմաս Վուդրո (1856–1924), ԱՄՆ-ի 28-րդ նախագահը՝ 1913–21-ին՝ Դեմոկրատ. կուս-յունից: Անցկացրել է մի շարք օրենքներ, վաստակել «առաջադեմ բարենորոգչի» անուն: Նախքան ԱՄՆ-ի մասնակցությունն ԱՀՊ-ին (1917-ի ապրիլ)՝ առաջ է քաշել պատերազմի ավարտից հետո երկրների միություն ստեղծելու (պետք է հետևեր համաշխ. խաղաղության պահպանմանը) գաղափար: Այն արտացոլվել է «տասնչորս կետերում», որոնց հիման վրա ստեղծվել է *Ազգերի լիգան*: Վ. վարել է հայանպաստ քաղ-յուն, նախաձեռնել է ԱՄՆ-ի՝ Հայաստանի մանդատն ստանձնելու (տես *Հայաստանի մանդատ 1920*) գործընթաց: *Սևրի հաշտության պայմանագրով* Վ.-ին է վստահվել ստեղծվելիք Հայկ. պետության սահմանների որոշման հարցը (տես *Վիլսոնի իրավարար պայմանակարգ*):

Խաղաղության Նոբելյան մրց. (1920):

ՎԻԼՍՈՆ, Ուիլսոն, Չառլզ Թոմսոն Ռիս (1869–1959), անգլիացի ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են մթն-ում օպտիկ. և էլ. երևույթներին, ջր. գոլորշիների կոնդեսացմանը, ռենտգեն. ճառագայթներին: Ստեղծել է միկրոմասնիկների հետազոտրի դիտարկման սարք (*Վիլսոնի խցիկ*):

Նոբելյան մրց. (1927):

ՎԻԼՍՈՆ, Ուիլսոն, Ջեյմս Հարոլդ (1916–1995), բարոն, Մեծ Բրիտանիայի վարչապետ՝ 1964–70 և 1974–76-ին: Լեյբորիստ. կուս-յան առաջնորդ՝ 1963–76-ին:

ՎԻԼՍՈՆ, Ուիլսոն, Ռոբերտ Վուդրո (ծ. 1936), ամերիկացի ռադիոաստղագետ: 1964–65-ին Ա. *Պենզիասի* հետ հայտնաբերել է միկրոալիք. ֆոնային ճառագայթումը (մնացորդային ճառագայթում): Նոբելյան մրց. (1978, Ա. Պենզիասի հետ):

ՎԻԼՍՈՆ, Ուիլսոն, Քենեթ Գեդես (1936–2013), ամերիկացի ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են տարր. մասնիկների ֆիզիկային, դաշտի քվանտ. տեսությանը, փուլ. անցումներին, նյութի կրիտիկ. վիճակին: Նոբելյան մրց. (1982):

ՎԻԼՍՈՆԻ ԻՐԱՎԱԲԱՐ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳ, *Հայաստանի մանդատի* մերժումից հետո Հայաստանի ու Թուրքիայի միջև սահմանի անցկացման և Հայաստանին դեպի ծով ելք տալու հարցի իրավարար լուծումը, որն առաջարկվել էր 1920-ին Սան Ռեմոյի խորհրդաժողովում և ամրագրվել 1920-ի *Սևրի հաշտության պայմանագրով* (հոդված 89): Ներկայացրել է ԱՄՆ-ի նախագահ Վ. *Վիլսոնը* 1920-ի նոյեմբ. 22-ին: Ըստ պայմանակարգի՝ Հայաստանը պետք է ստանար Վանի և Բիթլիսի վիլայեթների ավելի քան կեսը, Էրզրումի վիլայեթի հիմն. մասը, Տրապիզոնի վիլայեթի արլ. հատվածը՝ համանուն քաղաքով (ընդհ. առմամբ 90 հզ. *կմ*^{2} տարածք), որը ՀՀ-ին ապահովում էր ելք դեպի Սև ծով: Սակայն հակասությունների սրումն ԱՄՆ-ի և եվրոպ. տերությունների (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա ևն) միջև, ինչպես նաև նորաստեղծ Խորհրդ. Ռուսաստանի մերձեցումը քեմալ. Թուրքիայի հետ և բացասական վերաբերմունքը ՀՀ-ի նկատմամբ ձախողել են Վ. ի. պ-ի իրագործումը:

ՎԻԼՍՈՆԻ ԽՑԻԿ, լիցքավորված մասնիկների առաջին հետագծային *դետեկտորը*: Ստեղծել է Չ. *Վիլսոնը* 1912-ին: Աշխ-ի հիմքում ընկած է գերհագեցած գոլորշու կոնդեսացման երևույթը, այսինքն՝ հեղուկի կաթիլների (կոնդենսացման կենտրոնների) գոյացումը լիցքավորված արագ մասնիկի հետագծերի երկայնքով առաջացող իոնների շուրջը: Հետագայում Վ. խ. տեղը զիջել է այլ հետագծային դետեկտորներին

ՎԻԼՖՐՈՒԱ (Villefroy) Գուլիելմուս (1690–1777), ֆրանսիացի արևելագետ, հայագետ, ձեռագրագետ: Աստվածաբանության դ-ր: 1739-ին հրատարակել է Փարիզի Արքունի մտնդ-ի հայ. ձեռագրերի 2 ցուցակ: Լատ. և ֆրանս. է թարգմանել Ներսես Շնորհալու գործերից: Հեղինակ է «Հայկական եկեղեցին: Պատարագներ և ծեսեր» (1740) աշխ-յան, նաև հայ-ի քերակ-յանը և Հայաստանին վերաբերող այլ գործերի (բոլորն էլ՝ անտիպ):

ՎԻԿ (Vicia), բակլազգիների (թիթեռնածաղկավորներ) ընտանիքի բազմամյա, հազվադեպ՝ երկամյա կամ միամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 200 տեսակ, ՀՀ-ում՝ 32՝ գրեթե բոլոր մարզերում: Մեծ մասը մոլախոտ է:

ՎԻԿԱԼՈՅ, մագնիսակարծր համաձուլվածք. պարունակում է 52–54 % Co, մինչև 14 % V, մնացածը՝ Fe: Օգտագործվում է հաստատուն մագնիսների պատրաստման համար:

«ՎԻԿԻՆԳ» («Viking»), Մարսի ուսումնասիրման ամերիկ. ինքնաշխատ ուղեծրավայրէջք. միջմոլորակ. կայան: 1975-ին արձակվել են 2 կայաններ՝ «Վ.-1» (աշխ-ը ավարտել է 1982-ին) և «Վ.-2» (1980-ին), որոնց վայրէջք. բլոկները հասել են Մարս 1976-ին և առաջին անգամ Երկիր են հաղորդել այդ մոլորակի մակերևույթի լուսահեռուստատես. պատկերները:

ՎԻԿԻՆԳՆԵՐ, VIII–XI դդ.-ում Արմ. Եվրոպայի երկրներում ծով. առևտրակողոպտչ. և նվաճող. արշավանքների մասնակից սկանդինավներ: Ռուսիայում նրանց անվանել են «վարյագներ», Արմ. Եվրոպայում՝ «նորմաններ»: IX դ.-ում գրավել են Հս-արլ. Անգլիան, X դ.-ում՝ Հս. Ֆրանսիան (Նորմանդիա): Հասել են Հս. Ամերիկա:

ՎԻԿՈ (Vico) Ջամբատիստա (1668–1744), իտալացի փիլ.: Պատմականության և էթնիկ հոգեբ-յան հիմնադիրներից: Ըստ Վ.-ի՝ պատմությունն օբյեկտիվ և նախասահմանված բնույթ ունի, բոլոր ազգերը զարգանում են 3 դարաշրջաններից բաղկացած շրջափուլերով՝ աստված. (առանց պետականության, քրմերի ենթակայությամբ), հերոս. (ազնվական. պետություն) և մարդկային (ժողովրդավար. հանրապետություն կամ ներկայացուցչ. միապետություն): Հեղինակ է «Ազգի ընդհանուր բնույթի մասին նոր գիտության հիմքերը» (1725) աշխ-յան:

ՎԻԿՏՈՐ ԷՄԱՆՈՒԻԼ I (Vittorio Emanuele, 1759–1824), Սարդինիայի թագավոր՝ 1802–21-ին՝ *Սավոյական* հարստությունից: 1793–96-ին գլխավորել է հեղ. Ֆրանսիայի դեմ կռվող սարդին. բանակը, որի ջախջախումից և Պիեմոնտի ֆրանս. օկուպացումից հետո առավելապես եղել է Սարդինիա կղզում: Նապոլեոնի անկումից հետո՝ 1814-ին վերադարձել է Տուրին, 1814–15-ի Փարիզի հաշտությամբ վերստացել իր նախկին տիրույթները և Ջենովայի հանրապետության տարածքը:

ՎԻԿՏՈՐ ԷՄԱՆՈՒԻԼ II (1820–1878), Սարդինիայի թագավոր՝ 1849–61-ին և միավորված Իտալիայի 1-ին թագավորը՝ 1861–1878-ին: 1850-ին կառ-յան մեջ է ընդգրկել *Կավուրին*, 1852-ին նշանակել կառ-յան ղեկ.: 1859-ի ավստրո-իտալո-ֆրանս. պատերազմում Ջ. *Գարիբալդիին* նշանակել է կամավոր. կորպուսի հրամ.: Վ. Է. II-ին հաջողվել է Սարդին. թագավորությանը միացնելով Կենտր. և Հվ. Իտալիայի պետությունները՝ միավորել Իտալիան:

ՎԻԿՏՈՐ ԷՄԱՆՈՒԻԼ III (1869–1947), Իտալիայի վերջին թագավորը՝ 1900–46-

ին: Պաշտպանել է ֆաշիստ. դիկտատուրան: Չզտելով պահպանել միապետությունը՝ Վ. Է. III 1946-ի մայիսի 9-ին հրաժարվել է գահից հօգուտ որդու՝ Ումբերտոյի, և հեռացել երկրից: Մահացել է Եգիպտոսում:

ՎԻԿՏՈՐԻԱ, (Victoria, 1819–1901), Մեծ Բրիտանիայի թագուհի՝ 1837-ից: *Հանովերյան* հարստության վերջին ներկայացուցիչը: 1876-ին հռչակվել է Հնդկաստանի կայսրուհի: Վ.-ի գահակալության սկիզբը համընկել է Մեծ Բրիտանիայի առևտրաարդ. համաշխ. գերիշխանության հաստատման, իսկ 2-րդ կեսը՝ Բրիտ. ընդարձակ գաղութ. տերության ստեղծման հետ: Վ.-ի տիրապետության ժամանակաշրջանը կոչվել է «վիկտորիայի դար»:

ՎԻԿՏՈՐԻԱ, Վիկտորիա Նյանզա (Victoria, Victoria Nyanza), **Ուկրևե**, լիճ Արլ. Աֆրիկայում՝ Տանզանիայի, Քենիայի և Ուգանդայի տարածքում՝ 1134 *մ* բարձր-յան վրա: Մակերեսը՝ 68 հզ. *կմ*^{2} (ամենամեծ լիճը՝ Աֆրիկայում, և մեծությամբ 2-րդ քաղցրահամ լիճն աշխարհում՝ Վերին լճից հետո): Երկ.՝ 320 *կմ*, լայն.՝ 275 *կմ*, խոր.՝ մինչև 80 *մ*: Կան շատ կղզիներ (ընդհ. տարածքը՝ մոտ 6 հզ. *կմ*^{2}): Լիճն է թափվում Կագերա գետը (Նեղոսի ակունքը), արտահոսում՝ *Վիկտորիա Նեղոսը*: Գլխ. նվինգստ-ները՝ Էնտեբե, Կիսումու, Սվանզա և Բուկոբա: Հս. ափի մոտ է Ուգանդայի մայրաքաղաք Կամպալան: Ռուբոնդո կղզում (Ուգանդա) կա ազգ. պարկ:

ՎԻԿՏՈՐԻԱ, գետ Ավստրալիայի հս-ում: Երկ.՝ 570 *կմ*, ավազանը՝ 78 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ մոտ 140 *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Քիմբեռլիի սարավանդից, առաջացնելով էստուար՝ թափվում է Թիմորի ծովը: Վարարում է մուսսոն. անձրևների ժամանակ (դեկտ–մարտ): Նավարկելի է գետաբերանից 150 *կմ*:

ՎԻԿՏՈՐԻԱ, Սեյշելյան Կղզիների Հանրապետության մայրաքաղաքը Սաև կղզում, նվինգստ Հնդ. օվկ-ի ափին: Բն.՝ 25 հզ. (2002): Նավերին վառելիք մատակարարող կայան է Աֆրիկայից Հնդկաստան տանող ճանապարհին:

ՎԻԿՏՈՐԻԱ, կղզի Բարենցի ծովում՝ Ֆրանց Իոսիֆի Երկրի և Շպիցբերգենի միջև: Երկ.՝ մոտ 5 *կմ*, լայն.՝ մոտ 2,5 *կմ*: Գրեթե ամբողջովին սառցածածկ է:

ՎԻԿՏՈՐԻԱ, (Victoria Falls), աշխարհի խոշորագույն ջրվեժներից Հվ. Աֆրիկայում՝ Զամբեզի գետի վրա: Լայն.՝ 1800 *մ*, բարձր.՝ 120 *մ*, ջրի միջին ծախսը՝ 1400 *մ*^{3}/*վ*: Հայտնագործել է անգլիացի ճանապարհորդ Դ. *Լիվինգստոնը* 1855-ին և կոչել է անգլ. թագուհի Վիկտորիայի անունով: Տեղաբնիկներն անվանում են Մոզի-ոա-տունյա՝ «շառաչող ծուխ» կամ Սեոնգո՝ «ծիածան»: Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՎԻԿՏՈՐԻԱ, նահանգ Ավստրալ. Միության հվ-արլ-ում: Տարածքը՝ 227,4 հզ. *կմ*^{2}, բն.՝ 5,3 մլն (2011): Վարչ. կենտրոնը՝ *Մելբուռն*:

ՎԻԿՏՈՐԻԱ, ք-նվինգստ Կանադայում՝ Վանկուվեր կղզու հվ-արլ-ում, Բրիտ. Կոլումբիա նահագ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 80 հզ. (2011):

ՎԻԿՏՈՐԻԱ, Կանաղ. Արկտիկ. կղզեխմբի ամենախոշոր կղզիներից: Տարածքը՝ 221 հզ. *կմ*^{2}: Մակերևույթը դաշտավայրային է, բուսածածկույթը՝ տունդրային: Կան 300–500 *մ* բարձր-յան բլուրներ, բազմաթիվ լճեր: Գլխ. բնակավայրը՝ Քեմբրիջ Բեյ:

ՎԻԿՏՈՐԻԱ, Օուեն Ֆոլս (Victoria, Owen Falls), ջրամբար Ուգանդայի, Տանզանիայի և Քենիայի տարածքում: Մակերեսը՝ 76 հզ. *կմ*^{2} (ներառյալ Վիկտորիա լիճը՝ 68 *կմ*^{2}), ծավալը՝ 204,8 *կմ*^{3}, երկ.՝ 320 *կմ*: Ստեղծվել է 1954-ին՝ *Վիկտորիա Նեղոս* գետի վրա Օուեն Ֆոլս (Ուգանդա) ամբարտակի կառուցմամբ: Արդյունքում Վիկտորիա լճի մակարդակը բարձրացել է 3 *մ*-ով:

ՎԻԿՏՈՐԻԱ, ՄԵԾ ԱՆԱՊԱՏ (Great Victoria Desert), ավազե անապատ Ավստրալիայի հվ-ում: Տարածքը՝ 300 հզ. *կմ*^{2}: Զգվում է Մտյուարտ լ-շղթայից մինչև Աղի լճեր հարթավայրը՝ 1200 *կմ* երկ-յամբ: Առլգն լայն.՝ 550 *կմ*, միջին բարձր.՝ 150–300 *մ*: Ռելիեֆին բնորոշ են ավազ. թմբաշարերը (10–30 *մ* բարձր-յամբ): Միջթմբ. իջվածքներում աճում են ակացիա, գաճաճ նվենիներ: Տարեկան տեղումները 125–250 *մմ*: Անապատը գրեթե զուրկ է աղբյուրներից և դժվարամատչելի է: Վ. մ. ա-ով առաջինն անցել է անգլիացի հետազոտող Է. Ջայլսը 1875-ին:

ՎԻԿՏՈՐԻԱՅԻ ԵՐԿԻՐ (Victoria Land), տարածք Անտարկտիդայում՝ արլ. երկայն-յան 142° և 170°-ի միջև: Տարածվում է մինչև հվ. լայն-յան 78°-ը: Արմ-ում հարում է Ռոսսի ծովին, արմ-ում լեռնային է (Լիստեր լ., 4025 *մ*), արլ-ում սառցադաշտ. սարավանդ: Կենտր. մասում սառցադաշտի հզորությունը 2000–2500 *մ* է: Հայտնագործել է Ջ. Կ. Ռոսսիի արշավախումբը 1841-ին:

ՎԻԿՏՈՐԻՆՈՒՍ Գայուս Մարիուս (Caius Marius Victorinus), III–IV դդ-ի հռոմեացի գրող, ճարտասանության ուսուցիչ: Լատ. է թարգմանել Արիստոտելի, հուն.՝ նորպլատոնականների աշխ-ները: Ընդունել է քրիստոնեություն, մեկնաբանել է Պողոս առաքյալի ուղերձը, գրել «Ընդդեմ արիոսականության» աշխ-ը:

ՎԻԿՏՈՐՈՎ Միխայիլ Վլադիմիրովիչ (1893/94–1938), ռուս զորահրամ., նավատորմի 1-ին կարգի նավատորմապետ (ֆլագման, 1935): ԱՀՊ-ի և Ռուսաստան-նում քաղաքաց. պատերազմի մասնակից: 1921–24 և 1926–32-ին՝ Բալթիկ ծովի, 1924–26-ին՝ Սև և Ազովի ծովերի ծով. ուժերի պետ: 1932-ից՝ Հեռավոր Արևելքի, 1937-ից՝ Բանվորագյուղաց. կարմիր բանակի ծով. ուժերի պետ: Ռռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ՎԻԿՈՒԼՈՎ Վլադիմիր Իվանովիչ (ծ. 1946), ռուս. մարզիկ (տափօղակով հոկեյ): ԽՍՀՄ ս. վ. վ. (1967): ԲԿՄԱ թիմի հարձակվող (1964–79): Ձմեռ. օլիմպ. խաղերի (1968, 1972), աշխարհի, Եվրոպայի և ԽՍՀՄ բազմակի (1969–74) չեմպիոն:

ՎԻԿՈՒՆՅԱ (Vicugna), **վիգոն**, ուղտանմանների ընտանիքի կոշտուկոտն կաթնասունների սեռ: Հայտնի է 1 տեսակ: Սարմնի երկ.՝ 1,2–1,9 *մ*: Ապրում է Անդերի լ-ներում: Անխնա ոչնչացման (արժեքավոր բրդի համար) հետևանքով արեալը խիստ կրճատվել է: Գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում: Կատարվում են ընտելացման աշխ-ներ:

ՎԻՃԱԿ, *Համբարձման* տոնի 2-րդ անվանումը: Կապված է Քրիստոսի՝ համբարձումից հետո առաքյալների ու աշակերտների ժողովում Հուդայի փոխարեն վիճակահանությամբ նոր աշակերտ ընտրելու ավանդության հետ:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ, դիտարկումների արդյունքների ֆունկցիա, որը կիրառում են ուսումնասիրվող պատահական մեծությունների հավանականությունների բաշխման անհայտ հարաչափերի գնահատման համար:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԹԵՐՄՈԴԻՆԱՄԻԿԱ, *վիճակագրական ֆիզիկայի* բաժին, որը նվիրված է ֆիզ. համակարգի թերմոդինամիկ. բնութագրերի (վիճակի հավասարումներ, թերմոդինամիկ. պոտենցիալներ ևն) տես. որոշմանը՝ այդ համակարգը կազմող մասնիկների շարժման օրենքների և փոխազդեցությունների հիման վրա:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՖԻԶԻԿԱ, ֆիզիկայի բաժին. ուսումնասիրում է մակրոսկոպիկ մարմնի՝ որպես մեծ թվով մասնիկներից (մոլ-ներ, ատոմներ, էլեկտրոններ) բաղկացած համակարգի հատկությունները: Վ. ֆ-ում կիրառում են հավանականությունների տեսության վրա հիմնված վիճակագր. մեթոդներ: Վ. ֆ. բաժանում են *վիճակագրական թերմոդինամիկայի*, որը համակարգն ուսումնասիրում է վիճակագր. հավասարակշռության վիճակներում, և ֆիզ. կինետիկայի կամ չհավասարակշռված վիճակագր. թերմոդինամիկայի, որն ուսումնասիրում է չհավասարակշռված շարժընթացները: Քվանտ. մեխանիկայի օրենքների վրա հիմնված Վ. ֆ. անվանում են *քվանտային վիճակագրություն*: Վ. ֆ-ի հիմն. խնդիրը դիտարկող այն միկրոսկոպիկ. մեծությունների հաշվարկումներն են, որոնք բնութագրում են համակարգը և հենվում են փոխազդեցության օրենքների ու համակարգի մասը կազմող մասնիկների շարժումների վրա: Վիճակագր. հավասարակշռության դեպքում դրանք թերմոդինամիկ. պոտենցիալների (ազատ էներգիայի, ճնշման ևն) հաշվարկումներն են՝ կախված ջերմաստիճանից և այլ հարաչափերից, անհավասարակշռության դեպքում՝ անհավասարակշիռ շարժընթացները նկարագրող հավասարումների ստացումը: Վ. ֆ. գազերի, հեղուկների ու պինդ մարմինների տեսության հիմքն է և ունի կիրառության ընդարձակ տիրույթ:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ, 1. գործունեության տեսակ, որն ուղղված է հաս-յան կյանքը ողջ բազմազանությամբ (տնտեսություն, մշակույթ, բարոյականություն, քաղաքություն) քանակապես բնութագրող օրինաչափությունների վիճակագր. տեղեկույթի հավաքմանը, մշակմանը վերլուծությանը և հրապարակմանը: Այդ իմաստով՝ Վ. հաս. կյանքի որևէ բնագավառի վերաբերող ամփոփիչ ցուցանիշների ամբողջություն է: 2. Գիտ-յան բնագավառ (և դրան համապատասխան գիտաճյուղեր), որտեղ շարադրված են զանգված. քանակ. տվյալների հավաքման, չափման և վերլուծության ընդհ. հարցերը: Վ. դիտարկում է նյութերի ուսումնասիրության և մշակման հատուկ մեթոդներ՝ զանգված. վիճակագր. դիտարկումները, խմբավորման մեթոդը, միջին մեծությունները, հաշվեկշռման մեթոդը, գրաֆիկ. պատկերման մեթոդը: Որպես գիտ-յուն՝ Վ. ներառում է Վ-յան ընդհ. տեսությունը, տնտ. Վ., ճյուղ. Վ. և այլ բաժիններ:

ՎԻՃԱԿԻ ԴԻԱԳՐԱՄ, ֆազ. հավասարակշռության դիագրամ, թերմոդինամիկորեն հավասարակշռված համակարգի վիճակի հարաչափերի (ջերմաստիճան, ճնշում, բաղադրություն ևն) հարաբերակցության գրաֆիկ. պատկերումը: Հնարավորություն է տալիս որոշելու քանի

և ինչպիսի ֆազեր է առաջացնում համակարգը տվյալ ջերմաստիճանի, ճնշման, բաղադրության և վիճակի այլ հարաչափերի դեպքում: Վ. դ. օգտագործում են նյութագիտ–յան պրակտիկայում, ֆիզքիմ. վերլուծության մեջ են:

ՎԻՃԱԿԻ ԵՐԳԵՐ, *ջան գյուլումներ*, հայկ. ժող. խաղիկների ծիս. տեսակ՝ բաղկացած քառատող, եռատող, երկտող տնեղից՝ իմաստավոր որոշակի կրկնակների հետ համակցված: Երգել են երիտասարդ աղջիկներն ու կանայք ***համբարձման*** տոնին՝ վիճակահանության ժամանակ: Ընդգրկել են նաև պարերգեր:

ՎԻՃԱԿԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄ, 1. *ջերմային* Վ. հ. արտահայտում է հոմոգեն նյութի p ճնշման, T ջերմաստիճանի և V տեսակարար ծավալի (կամ ρ խտության) միջև եղած կապը. f (P, T, V) = 0: 2. **Կալորիական** Վ. հ. արտահայտում է որևէ կալորիական մեծության (ներքին էներգիա, ***էնթալպիա, էնտրոպիա*** ևն) կախվածությունը թերմոդինամիկ. հարաչափերից, օր.՝ P–ից և T–ից կամ V–ից և T–ից: Տարբեր ագրեգատ. վիճակների համար առավել հիմնավորված է գազերի Վ. հ.: 1 մոլ իդեալ. գազի համար Վ. հ.՝ P = RT/V, որտեղ R–ը գազի ունիվերսալ հաստատունն է: Իրական գազերի համար կիրառում են վիրիալ Վ. հ.՝ $P = RT\,(1/V + B_2/V^2 + B_3/V^3 + \ldots)$, որտեղ B_2–ը, B_3–ը ... 2–րդ, 3–րդ և այլ վիրիալ գործակիցներն են, արտահայտում են մոլ–ների փոխազդեցությունը և կախված են ջերմաստիճանից (տես նաև ***Վան դեր Վաալսի հավասարում***):

ՎԻՃԱԿԻ ՀԱՐԱՉԱՓԵՐ, ֆիզ. մեծություններ, որոնք ունեն օբյեկտիվ չափ և բնութագրում են համակարգի մակրոսկոպիկ վիճակը: Դրանք են ճնշումը, ջերմաստիճանը, խտությունը, բաղադրիչների կոնցենտրացիան, մագնիս. ինդուկցիան ևն:

ՎԻՃԱԿԻ ՎԻՐԻԱԼ ՀԱՎԱՍԱՐՈՒՄ, *Վիրիալ թեորեմ* (< լատ. vires – ուժեր), մասնիկների դաս. համակարգի միջին կինետիկ. էներգիան դրանում գործող ուժերի հետ կապող առնչություն: Ստացել է Ռ. ***Կլաուզիուսը*** 1870–ին: Կիրառվում է վիճակագր. ֆիզիկայում, աստղաֆիզիկայում, ատոմ. համակարգերի տեսությունում:

ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ, 1. արձանագրություններ ժայռերի, քարերի, կառույցների պատերի, կոթողների, տապանաքարերի, մահարձանների և քարե այլ հուշարձանների վրա: Առավելապես տարածված է եղել Հին Եգիպտոսում, Միջագետքում, Հայաստանում և այլուր: Հնագույն Վ.–ները մ. թ. ա. V–III հզ–ամյակից են: Հայաստանի տարածքում հայտնաբերված ամենահին Վ.–ները աքքադ. և ուրարտ. արձանագրություններն են (մ. թ. ա. XII–VI դդ.): 2. Լիտոգրաֆիա, ***հարթ տպագրության*** եղանակ, որտեղ որպես տպաձև օգտագործվում է քարի մակերևույթը: Հայտնագործել է Ա. Զեննեֆելդը 1798–ին Գերմանիայում: 1930–ական թթ–ից դուրս է մղվել ***օֆսեթ տպագրության*** տարածմամբ, կիրառվում է միայն ***էսպամպների*** տպագրության համար:

ՎԻՄՊԵԼ (հոլ.՝ wimpel), 1. նավի՝ նեղ, երկար դրոշ՝ երկատված ծայրով: Նավարկության ընթացքում նավի համար ծառայում է որպես պետ. պատկանելության արտաքին նշան: 2. Անցյալում կիրառվող նավատորմ. տերմին՝ նավը, որպես առանձին միավոր, նշանակելու համար: 3. Պատասխան Վ., ազդանշանների ռազմածով. տեսության համաձայն՝ դրոշ է, որը նշանակում է՝ «տեսնում և հասկանում եմ ազդանշանը»: 4. Ավիացիայում՝ երկար վառ ժապավենով պատյան, որը նետվում է ինքնաթիռից որևէ բան գցելու համար:

ՎԻՅՈՄ (Vuillaume) Ժան Բատիստ (1798–1875), աղեղն. երաժշտ. գործիքներ պատրաստող ֆրանսիացի վարպետ: Ստեղծել է ինքնատիպ կառուցվածքի կոնտրաբաս (օկտարաս, 1849), ալտ (վիոլա կոնտրալտո, 1855), դաշնամուրի հատուկ ոտնակմեղմոց (1867), 1865–ից սեփ. նմուշներով պատրաստել ջութակներ, ալտեր, թավջութակներ, նաև աղեղներ:

ՎԻՆ (Wien) Վիլհելմ (1864–1928), գերմանացի ֆիզիկոս: Աշխ–ները վերաբերում են ճառագայթման տեսությանը, օպտիկային, թերմոդինամիկային, գազ. պարպման ֆիզիկային: Արտածել է հետագայում իր անվամբ կոչված ***Վինի ճառագայթման օրենքը*** և ***Վինի շեղման օրենքը***: Նոբելյան մրց. (1911):

ՎԻՆ (Vinh), ք. Վիետնամի կենտր. մասում, Նգեթին պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 490 հզ. (2015): Վ.–ի մոտ է ***Հո Շի Մինի*** ծննդավայրը:

ՎԻՆ (պիլ.՝ vin – քնարի տեսակ), լար. կսմթթ. երաժշտ. գործիք վաղմիջնադար. Հայաստանում: Ողրի երգերն ու պարերը նվագակցել են փողով, փանդիռով և Վ.–ով:

ՎԻՆԳՐԱՆՈՎՄԿԻ Նիկոլայ Ստեպանովիչ (1936–2004), ուկրաինացի բանաստեղծ, դերասան, կինոռեժ.: Ուկր. ԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1937): Հեղինակ է «Ատոմային նախերգանքներ» (1962), «Հարյուր բանաստեղծություն» (1967), «Այծեղջյուր» (1977) և այլ բանաստեղծությունների ժող–ների, նաև մանկ. գործերի: Նկարահանել է «Հուսո ափ» (1967), «Խոհեր Բրիտանկայի մասին» (1970), «Կլիմկո» (1984) և այլ ֆիլմեր: Ուկր. ԽՍՀ Պետ. մրց. (1984):

ՎԻՆԴԱՈՒՍ (Windaus) Ադոլֆ (1876–1959), գերմանացի կենսաքիմիկոս: Ուսումնասիրել է ***ստերոիդների*** կառուցվածքը: Բացահայտել է D վիտամինի առաջացումն էրգոստերինից՝ ԱՄՃ–ի ազդեցությամբ: Սինթեզել է հիստամինը: Նոբելյան մրց. (1928):

ՎԻՆԴԵԼԲԱՆԴ (Windelband) Վիլհելմ (1848–1915), գերմանացի փիլ.: Փիլ–յունը ընորոշել է որպես ուսմունք հանրանշանակ արժեքների մասին («Պրելյուդներ», 1884): Գիտ–յունները դասակարգել է նոմոգրաֆիկ. (օրենքներին առնչվող) և իդեոգրաֆիկ. (եզակի, անկրկնելի երևույթներ ուսումնասիրող) խմբերի:

ՎԻՆԴԻՇՄԱՆ (Windischmann) Ֆրիդրիխ (1811–1861), գերմանացի հայագետ, արևելագետ: Հայ–ի համեմատ. ուսումնասիրության հիմնադիրը (Հ. ***Պետերմանի*** հետ): Հեղինակ է «Հայերենի տեղը արիական լեզվաբնի մեջ» (1846) աշխ–յան, որտեղ բազմաթիվ փաստարկումներով հաստատել է, որ հայոց լեզուն հնդեվրոպական է և մտնում է արիական (հնդիրան.) ճյուղի մեջ, նաև «Զրադաշտական ուսումնասիրություններ» (հրտ.՝ 1863) ժող–ի:

ՎԻՆԳՀՅԱ, լ–ներ Հնդկաստանում՝ Հինդուստան թ–կղզու հս–ում: Բարձր.՝ մինչև 881 մ: Հվ. լանջերը կտրտված են: Տարածված են տերևաթափ արևադարձ. անտառները: Կա ազգ. պարկ (Շիվպուրի):

ՎԻՆԴՍՅՈՐՖԻՆԳ (անգլ.՝ windsurfing, < wind – քամի, surf – ալեբախություն), ***առագաստային սպորտի*** տարատեսակ. մրցարշավ՝ ազատ պտտվող կայմով (բարձր.՝ 4,2 *մ*) առագաստ (մակերեսը՝ 7,4 $մ^2$) ամրացված խցանափայտե կամ պլաստմասսայե տախտակի (վինդսյորֆներ, երկ.՝ 3,7 *մ*, լայն.՝ 0,65, զանգվածը՝ 27 *կգ*) վրա կանգնած: Առաջացել է ԱՄՆ–ում (1960–ական թթ–ին): Եվրոպայի և աշխարհի առաջնությունները՝ 1973–ից: Անցկացվում է առագաստ. ***ռեգատայի*** կանոններով: Վ.–ի միջազգ. ընկերակցությունը (IWA) հիմնադրվել է 2001–ին:

ՎԻՆԵՐ (Wiener) Նորբերտ (1894–1964), ամերիկացի կիբեռնետիկ: «Կիբեռնետիկա» աշխ–յան մեջ ձևակերպել է կիբեռնետիկայի հիմն. դրույթները: Աշխ–ները վերաբերում են մաթ. անալիզին, հավանականությունների տեսությանը, էլ. ցանցերին և հաշվող. տեխնիկային:

ՎԻՆԻ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ՕՐԵՆՔ, բացահայտում է ***բացարձակ սև մարմնի*** հավասարակշիռ ճառագայթման էներգիայի սպեկտրի բաշխումը՝ ըստ հաճախությունների (կամ ալիքների երկ–յունների)՝ կախված բացարձակ ջերմաստիճանից: Մեծ հաճախությունների համար Պլանկի ճառագայթման օրենքի սահմանային դեպքն է: Ձևակերպել է Վ. ***Վինը*** 1896–ին:


ՎԻՆԻ ՇԵՂՄԱՆ ՕՐԵՆՔ, հավասարակշիռ ճառագայթման սպեկտրում էներգիայի մեծագույն արժեքին համապատասխանող ալիքի երկ–յունը հակադարձ համեմատական է ճառագայթող մարմնի բացարձակ ջերմաստիճանին: Ձևակերպել է Վ. ***Վինը*** 1893–ին:

ՎԻՆԻԼԱՅԻՆ ԵԹԵՐՆԵՐ, չհագեցած եթերներ: Վինիլսպիրտի ածանցյալներն են՝ CH_2=CHOR (R–ն ալկիլ կամ արիլ խումբ է): Մեծ մասամբ անգույն հեղուկներ են, վատ են լուծվում ջրում: Քիմիապես ակտիվ են: Երկվինիլային եթերը՝ CH_2=CH–O–CH=CH_2, թմրանյութ է և խիստ թունավոր, ինքնաբռոցավառվում է օդում:

ՎԻՆԻԼԱՅԵՏԱՏ, CH_3–COO–CH=CH_2, քացախաթթվի և վինիլսպիրտի էսթերը, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 73°C: Կիրառվում է պոլիվինիլացետատ և էմուլսային ներկերի, հատակի պատվածքների, ձայնասկավառակների արտադր–յան մեջ օգտագործվող տարբեր (ստիրոլի, էթիլենի, վինիլքլորիդի հետ) համապոլիմերներ ստանալու համար:

ՎԻՆԻԼԱՅԵՏԻԼԵՆ, *բուտենին*, CH_2=CH–C≡CH, չհագեցած ածխաջրածին, անգույն գազ է, հեշտ է հեղուկանում ($t_{եռ.}$՝ 5,5°C): Խիստ ռեակցիոնունակ է: Կիրառվում է ***քլորոպրենի*** արտադր–յան համար: ԹՍՊ–ն օդում՝ 20 $մգ/մ^3$:

ՎԻՆԻԼ(N–)ՊԻՐՈԼԻԴՈՆ, 1–վինիլ–2–պիրոլիդոն, անգույն գրգռող հեղուկ է, լուծվում է ջրում, $t_{եռ.}$ 214–215°C (քայքայվելով): Կիրառվում է պոլիվինիլպիրոլիդոնի, վինիլքլորիդի, վինիլացետատի, ակրիլոնիտրիլի, մեթիլմետակրիլատի հետ համապոլիմերների արտադր–յան մեջ:




ՎԻՆԻԼԻԴԵՆՔԼՈՐԻԴ, CH_2=CCl_2, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 31,7°C: Օգտագործվում է պոլիվինիլիդենքլորիդի և վինիլիդենքլորիդի (վինիլքլորիդի, ակրիլոնիտրիլի հետ) համապոլիմերների ստացման համար:

ՎԻՆԻԼՊԻՐԻԴԻՆԱՅԻՆ ԿԱՈՒՉՈՒԿՆԵՐ, դիեն. ածխաջրածինների և վինիլպիրիդինների, գլխավորապես՝ բուտադիենի և 2–մեթիլ–5–վինիլպիրիդի համապոլիմեր–

նները: Վ. կ–ի ռետինները յուղա–, բենզա– և սառնակայուն են, լավ հարակցվում են տարբեր նյութերի հետ: Կիրառվում են լատեքսների ձևով՝ դողերի հենքի համար:

ՎԻՆԻԼՊԻՐԻԴԻՆՆԵՐ, անգույն հեղուկներ են: Կիրառվում են նուրբ օրգ. սինթեզում և որպես մոնոմերներ՝ ***վինիլպիրիդինային կաուչուկների***, պոլիվինիլպիրիդինների արտադր–յան մեջ:



ՎԻՆԻԼՔԼՈՐԻԴ, CH_2=CHCl, անգույն գազ է, $t_{եռ.}$՝ –13,8ºC: Օգտագործվում է պոլիվինիլքլորիդ և վինիլքլորիդի (վինիլացետատի, ակրիլոնիտրիլի հետ) համապոլիմերներ ստանալու համար:

ՎԻՆԻՈԼԱ (Vignola, Բարոցցի) Ջակոմո դա (1507–1573), իտալացի ճարտ.: Պալատներում (Ֆառնեզեն՝ Կապրարոլում, 1558–73), վիլլաներում (Հուլիոս III պապի՝ Հռոմում, 1550–55), եկեղեցիներում (Իլ Ջեզուն՝ Հռոմում, 1568–84) Վերածննդի ճարտ–յան սկզբունքները համադրել է մաներիզմի տարրերի հետ: Հեղինակ է «Ճարտարապետության հինգ օրդերների կանոնը» (1562) գրքի:

ՎԻՆԻՉԵՆԿՈ Վլադիմիր Կիրիլովիչ (1880–1951), ուկրաինացի գրող: 1917–18–ին՝ Ուկրաինայի գլխ. քարտուղարության, 1918–19–ին՝ Ուկրաինայի դիրեկտորիայի նախագահ: 1920–ից՝ վտարանդի: Հեղինակ է «Ցանկանում եմ» (1916), «Կճատաքիթ Մեֆիստոֆելի գրառումները» (1917) իմպրեսիոնիստ, «Արևային մեքենա» (1924) սոցիալ–ֆանտաստիկ, «Բորոտանոց» (1938) հակաուտոպ. վեպերի, «Ազգի վերածնունդը» (հ. 1–3, 1920) վավերագր. հուշագրքի, «Խոսքը քոնն է, Ստա՛լին» (1950, հրտ.՝ 1971) քննադատ. վեպի, նաև պիեսների, վիպակների, պատմվածքների, ակնարկների, օրագրության (շուրջ 40 հատոր, մեծ մասը՝ անտիպ):

ՎԻՆԻՊԼԱՍՏ, կոշտ պլաստմասսա ***պոլիվինիլքլորիդի*** հիմքի վրա: Թողարկվում է թերթերի, սալիկների, խողովակների, ճաղերի, նաև հատիկների տեսքով: Կիրառվում է որպես կոռոզիակայուն (տարողությունների, խողովակների արտադր–յան մեջ), դրվագման և տանիքածածկի (շին–յան մեջ) նյութ:

ՎԻՆԿԼԵՐ (Winkler) Հանս Գյունտեր (ծ. 1926), գերմանացի մարզիկ (ձիասպորտ): Օլիմպ. խաղերի հնգակի (1956, 1960, 1964, 1972), աշխարհի (1954, 1955), Եվրոպայի (1957) չեմպիոն՝ անհատ. և թիմ. հաշվարկում (արգելքների հաղթահարում):

ՎԻՆԿԼԵՐ (Winckler) Հուգո (1863–1913), գերմանացի ասորագետ և հնագետ: Գերմանիայի Առաջավորասիական ընկ–յան հիմնադիրը: Ուսումնասիրել ու հրատարակել է մի շարք սեպագիր բնագրեր: Բողազքոյի 1906–07–ի պեղումների ժամանակ բացել է խեթ. մայրաքաղաք Խաթուշաշի (Խաթուսաս) պալատներն ու ամրությունները և խեթ. թագավորների դիվանը:

ՎԻՆԿԼԵՐ (Winkler) Յոհան Հենրիխ (1897–1947), հրթիռ. տեխնիկայի բնագավառի գերմանացի ճարտարագետ: 14.03.1931–ին Եվրոպայում առաջինն է արձակել հեղուկահրթիռ. շարժիչով հրթիռ:

ՎԻՆԶՈՐ, **Նյու Վինձոր** (Windsor, New Windsor), ք. Մեծ Բրիտանիայի Բերկշիր կոմսությունում՝ Թեմզա գետի ափին՝ Լոնդոնից 37 *կմ* արմ.: Բն.՝ 28,3 հզ. (2006): Վ. անգլ. թագավորների գլխ. ամառ. նստավայրն է: Թագավոր. դղյակը հիմնադրել է Վիլհելմ Նվաճողը XI դ–ի վերջին: Այն ունի 2 բակ, կենտրոնում՝ «շրջանաձև աշտարակ» (մոտ 1272), պալատ (1377) և հինավուրց պուրակ (հիմնականում՝ XVII–XVIII դդ.): Հովհարաձև թաղերով Սենտ Ջորջ կապելլան (1474–1528) անգլ. ուշ. գոթ. ոճի գլուխգործոցներից է: Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՎԻՆՄԱԼ (ֆրանս.՝ Vignemale), լ–գագաթ Ֆրանս. Ալպերում՝ Իսպանիայի և Ֆրանսիայի սահմանին: Բարձր.՝ 3299 *մ*:

ՎԻՆԱ ԴԵԼ ՄԱՐ (Vina del Mar), ք–նվ/նգստ Չիլիում՝ Վալպարաիսոյի ագլոմերացիայում: Բն.՝ 311,4 հզ. (2010):

ՎԻՆՅԻ (Vigny) Ալֆրեդ Վիկտոր դը (1797–1863), ֆրանսիացի գրող: Հեղինակ է «Էոլա» (1824), «Մովսես» (1826), «Ջրհեղեղ» (1826), «Գայլի մահը» (1838, հրտ.՝ 1843) պոեմների, «Չեթթերտոն» (1835) հոգեբ. դրամայի, նաև «Բանաստեղծի օրագիրը» (հրտ.՝ 1867) օրագրության, ինքնակենսագր. «Զինվորի գերությունը և վեհությունը» (մաս 1–3,1835) վեպի:

ՎԻՆՆԻՊԵԳ, 1. ***Ուինիպեգ*** (Winnipeg, հնդկացիական կրի ցեղի լեզվով՝ կեղտոտ ջուր), լիճ Կանադայի հվ–ում: Մակերեսը՝ 24,3 հզ. *կմ*², խոր.՝ մինչև 28 *մ*: Մակարդակի բազմամյա տատանումը 3 *մ* է: Մառցակալում է նոյեմբ–ապրիլ: Նավարկելի է, կա արդյունագործ. ձկնորսություն: 2. Ք. Կանադայի հվ–ում, Մանիթոբա նահանգ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 705 հզ. (արվարձաններով, 2016): Հացահատիկի համաշխ. նշանակության շուկա է: Ունի համալսարան, օդանավակայան: Հիմնադրվել է 1738–ին:

ՎԻՆՆԻՑԱ, ք. Ուկրաինայում, համանուն մարզի վարչ. կենտրոնը՝ Հվ. Բուգ գետի ափին: Բն.՝ 366,7 հզ. (2010): Երկթղ. հանգույց է: Հայտնի է 1363–ից՝ որպես լիտվ. ամրոց:

ՎԻՆՆԻՑԿԱ (Winnicka) Լյուցինա (1928–2013), լեհ դերասանուհի: Աշխատել է Շչեցինի, Վարշավայի թատրոններում, նկարահանվել կինոյում («Փոյուգիական աստղի տակ», 1954, «Գնացք», 1959, «Մայրապետ Յոհաննան ի հրեշտակաց», 1961, «Պանի Հանկայի օրագիրը», 1963, «Խաղ», 1969, ևն): Լ/Ժ՝ Պետ. (1956), Վենետիկի միջազգ. կփ (1959) մրց–ներ:

ՎԻՆՈԳՐԱԴՈՎ Ալեքսանդր Պավլովիչ (1895–1975), ռուս. երկրաքիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1953): Սոց. աշխ. հերոս (1953, 1975): Աշխ–ները վերաբերում են երկրաքիմիային, կենսաերկրաքիմիային և տիեզերաքիմիային: Լենինյան (1962), ԽՍՀՄ Պետ. (1949, 1951–ին՝ կրկնակի) մրց–ներ:

ՎԻՆՈԳՐԱԴՈՎ Իվան Մատվեևիչ (1891–1983), ռուս. մաթեմատիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1929): Սոց. աշխ. հերոս (1945, 1971): Ստեղծելով եռանկյունաչափ. գումարների դաս. մեթոդ՝ ստացել է հիմնարար արդյունքներ և լուծել վերլուծ. թվերի տեսության կարևոր խնդիրներ: ԽՍՀՄ Պետ. (1941, 1983), Լենինյան (1972) մրց–ներ:

ՎԻՆՈԳՐԱԴՈՎ Միխայիլ Եվգենևիչ (1928–2017), ռուս. օվկիանոսագետ: ՌԳԱ ակադ. (1990): Աշխ–ները վերաբերում են ծով. համակեցությունների էկոլոգիային, պլանկտոնի տեղաբաշխման, բացծով. (պելագիալ) գոտում արտադր. շարժընթացների մոդելավորման հարցերին: ԽՍՀՄ Պետ. մրց (1977):

ՎԻՆՈԳՐԱԴՈՎ Վիկտոր Ալեքսեևիչ (1939–2016), ռուս. լեզվաբան: ՌԳԱ թղթ. անդամ (2006): 2001–12–ին՝ ՌԳԱ լեզվի ինստ–ի տնօրեն: Հեղինակ է ռուս–ի ինչակարգությանը, դասավանդման մեթոդիկային, աֆրիկ. լեզուների տիպաբանությանը վերաբերող աշխ–ների: «Հանրագիտական լեզվաբանական բառարան»–ի (2–րդ հրտ.՝ 2002, ՌԴ Պետ. մրց.՝ 1995) համահեղ.:

ՎԻՆՈԳՐԱԴՈՎ Օլեգ Միխայլովիչ (ծ. 1937), ռուս. բալետմայստեր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1983): 1968–96–ին (ընդհատումով)՝ Լենինգրադի ՕԹԹ–ի գեղ. ղեկ. և գլխ. բալետմայստեր (Ս. Ս. Պրոկոֆևի «Ռոմեո և Ջուլիետա», 1965, Ֆ. Հերոլդի «Լիզա և Կոլեն կամ Ձուր նախազգուշություն», 1971, Բ. Ի. Տիշչենկոյի «Յարոսլավնա», 1974, Պ. Ի. Չայկովսկու «Ռևիզոր», 1980, ևն): Վաշինգտոնում հիմնադրել է բալետի համապարփակ ակադ. (1990), 1998–ից՝ Սեուլի բալետի խմբի գեղ. ղեկ.: ՌԽՖՍՀ Մ. Ի. Գլինկայի անվ. (1970), ՌԴ (2001) Պետ. մրց–ներ:

ՎԻՆՈԳՐԱԴՈՎԻ ԱՎԱԶԱՄՈՒԿ (Meriones vinogradovi), ***ավազամկների*** ընտանիքի կաթնասուն կենդանի: Տարածված է ՀՀ Արագածոտնի, Վայոց ձորի մարզերի օշինդր. կիսաանապատ. տեղանքներում: Մարմնի երկ.՝ մինչև 17,1, պոչինը՝ 15,3 *սմ*: Ապրում է գետնափոր բարդ կառուցվածքով բներում: Ժանտախտի հարուցչի հիմն. կրողն է:

ՎԻՆՈԳՐԱԴՍԿԻ Սերգեյ Նիկիտիչ (1856–1953), ռուս. մանրէաբան, Ռուսաստանում մանրէաբանության հիմնադիրներից: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. (1894), ՌԳԱ պատվ. (1923) անդամ: 1922–ից ղեկավարել է Փարիզի Պաստյորի անվ. ագրոբակտերիաբան. բաժանմունքը:

«ՎԻՆՉԵՍՏԵՐ», 1. պաեեստատուփ., իսկ ավելի ուշ՝ ինքնաձիգ հրացանների անվանումը, որոնք XIX դ–ի կեսից թողարկում էր հրաձգ. զենքի ամերիկ. համանուն ֆիրման (հիմնադիր Օ. Ֆ. Վինչեստերի անվամբ): 2. Հաշվող. տեխնիկայում օգտագործվող կոշտ մագնիս. (վինչեստերյան) սկավառակների տարածված անվանումը:

ՎԻՆՍԵՆՏ ԲՈՎԵԱՅԻ (Vincent de Beauvais, մոտ 1190–1264), դոմինիկյան վանական, հանրագիտակ: Հեղինակ է միջնադար. գիտելիքին վերաբերող մեծահամբավ «Մեծ հայելի» համապարփակ հանրագիտարանի (հ. 1–4, հրտ.՝ 1473):

ՎԻՆՏԵՐ (Winter) Վեռներ (1923–1972), գերմանացի լեզվաբան, հնդեվրոպաբան, հայագետ: Հեղինակ է «Հայկական հնչույթաբանության խնդիրներ» (հ. 1–3, 1954–62), «Ակնարկներ հայերենի ստուգաբանության» (1957), «Վաղ բարբառային տարբերակվածության հետքերը հին հայերենում» (1975), «Հայկական ձեռագրեր», «Հայկական վիմագրություն» (երկուսն էլ՝ 1955) աշխ–ների:

ՎԻՇԱԿՀԱՊԱՏՆԱՄ, ք–նվ/նգստ Հնդկաստանի Անդհրա Պրադեշ նահանգ–ում՝ Բենգալյան ծոցի ափին: Բն.՝ 1,73 մլն (2011):

ՎԻՇԱՊ, **ուշապ, յիշաք**, երևակայական, գերբն. էակ ժող. առասպելաբանության մեջ: Պատկերվել է թևավոր օձի (երբեմն՝ բազմագլուխ) կամ այլ կենդանիների (օձ, ձուկ, առյուծ ևն) մարմնաձևերի համադրմամբ: Վ–ի կերպարում միահյուսվել են երկինքն ու երկիրը: Դրվել են աղբյուրների ակունքների, ջրամբարների, արհեստ. լճերի մոտակայքում՝ որպես երկրագործությունն ու ոռոգումը հովանավորող, ջրի պաշտամունքն անձնավորող աստվածությունների կուռքեր: Հայաստանում (Գեղամա լ–ներում, Գառնիում, Ճորոխ գետի

ավազանում և այլուր) հայտնաբերվել են Վ.-ի պաշտամունքին նվիրված միակտոր քարից հնագույն քարակոթողներ (ամենամեծը՝ 5,06 *մ* բարձր.)՝ ձկան տեսքով:

ՎԻՇԱՊԱԳԼՈՒԽ (Dracocephalum), խուլեղինջազգիների (շրթնածաղկավոր) ընտանիքի միամյա և բազմամյա խոտաբույսերի ու կիսաթփերի ցեղ: Հայտնի է 45 տեսակ, ՀՀ-ում՝ 5՝ գրեթե բոլոր մարզերում: Ողկուզավոր Վ. գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՎԻՇԱՊԱԳՈՐԳ, հայկ. գորգ. հորինվածքում բուս. և կենդ. զարդանախշերի զուգորդումներով կարևորված է ***վիշապի*** ոճավորված կերպարը (այստեղից՝ անվանումը): Համարվում է հայկ., նաև ողջ գորգագործության ամենահին խումբը: Դաս. Վ.-ի ընտիր նմուշներ են պահվում աշխարհի բազմաթիվ թանգարաններում (Բեռլինի պետ., Լոնդոնի Վիկտորիայի և Ալբերտի, Վիեննայի դեկորատիվ արվ.-ի ևն): Հայաստանում ստեղծվել են նաև Վ.-ի տեսակներ՝ գորգագործ-արվեստագետների (Հ. Քեշիշյան և ուր.) էսքիզներով:

ՎԻՇԱՊԱԼԻՃ, Ազատ, Գեղարդա լիճ, լիճ Գեղամա լ.-շղթայի արմ. լանջին (ՀՀ Կոտայքի մարզի Գողթ գ.-ի մոտ)՝ 2620 *մ* բարձրյան վրա: Մակերեսը՝ 0,3 *կմ*²: Առաջացել է հրաբխ. արգելափակման հետևանքով:

ՎԻՇԱՊԱՆԾԱՌ (Dracaena), շուշանազգիների ընտանիքի բազմամյա ծառանման բույսերի կամ թփերի ցեղ: Հայտնի է Վ.-ի մոտ 150 տեսակ՝ տարածված Արլ. կիսագնդի մերձարևադարձ. և արևադարձ. շրջաններում: Ապրում է մինչև 5–6 հզ. տարի: Կեղևից արտադրվում է կարմիր խեժանման նյութ՝ «վիշապի արյուն», որն օգտագործվում է ներկանյութեր պատրաստելու համար:

ՎԻՇԱՊԱՍԱՐ, լ.-գագաթ Գեղամա լ.-շղթայի հվ.-ում՝ ՀՀ Արարատի մարզում: Բարձր.՝ 3157 *մ*: Հրաբխ. խարամային կոն է: Լանջերին կան սառցադաշտի ազդեցության (էկզարացիա) հետքեր:

ՎԻՇԱՊԻ ԼԵՌՆԵՐ (բուրերեն՝ Dragensberg), լ.-ներ Աֆրիկայի հվ.-արլ.-ում: Բարձր.՝ մինչև 3482 *մ* (Նոտլենյանա լ.):

ՎԻՇԱՊՆԵՐ (Bopidae), **կեղծոտանիներ**, թեփուկավորների կարգի օձերի ենթակարգի ընտանիք: Հայտնի է 74 տեսակ: ՀՀ-ում տարածված է փորող վիշապիկների ենթաընտանիքի 1 տեսակ՝ արմ. վիշապիկը: Երկ.՝ 0,2 *մ* (միջին չափերի Վ.) և մոտ 10 *մ* (հսկա Վ.): Վերջիններս պահպանվել են միայն արևադարձ. երկրներում: Կան ձվադիր և ձվակենդանածին տեսակներ: Թունամուղ ատամներ չունեն: Մնվում են տարբեր ողնաշարավորներով: Ապրում են անհոսք և հոսող ջրավազաններում, հողում, ծառերի վրա, անապատներում և այլուր:

ՎԻՇԱՈՒՄ (Vieschaus) Էրիկ (ծ. 1947), ամերիկացի գենետիկ (ծագումով՝ գերմանացի): Ք. *Նյուսլայն-Ֆոլհարդի* հետ հայտնագործել է դրոզոֆիլի զարգացման վաղ փուլերում նրա մարմնի տարբեր հատվածները հսկող գեները: Բացահայտել է, որ հայտնաբերված 20-ից ավելի գենների գործառնությունն օրգանիզմի կառուցման կարևոր փուլ է և համապիտանի՝ կենդ. աշխարհում: Նոբելյան մրց. (1990, Է. *Լյուիսի* և Ք. Նյուսլայն-Ֆոլհարդի հետ):

ՎԻՇԻՆՍԿԻ (Wyszynski) Անդրեյ Յանուարևիչ (1883–1954), խորհրդ. պետ. գործիչ, իրավաբան և դիվանագետ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939): 1939–44-ին՝ ԽՍՀՄ ԺԿԽ նախագահի, 1940-ից՝ ԱԳ նախարարի տեղակալ, 1949-ից՝ նախարար: 1953–54-ին՝ ՄԱԿ-ում ԽՍՀՄ մշտ. ներկայացուցիչ:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ Գալինա Պավլովնա (1926–2012), ռուս երգչուհի (սոպրանո): ԽՍՀՄ ժող. արտիստ (1966): Մ. Լ. *Ռոստրոպովիչի* կինը: 1952–74-ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մեներգչուհի (Տատյանա՝ Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», Աիդա, Վիոլետտա՝ Ջ. Վերդիի «Աիդա», «Տրավիատա», ևն): Երգել է նաև Նյու Յորքի «Մետրոպոլիտեն-օպերայում», Լոնդոնի «Քովենթ Գարդեն»-ում: 1974-ին (ամուսնու հետ) մեկնել է արտերկիր, 1978-ին զրկել են ԽՍՀՄ քաղաքացիությունից (վերականգնել են 1990-ին): 2002-ից՝ Օպեր. երգեցողության դպրոցի (Մոսկվա) ղեկ.:

ՎԻՇՆԵՎՍԿԻ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (1906–1975), ռուս. վիրաբույժ: ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1957), բժշկ. ծառայության գեներալ-գնդ. (1963): Սոց. աշխ. հերոս (1966): Ա. Վ. *Վիշնևսկու* որդին: Խորհրդ. բանակի գլխ. վիրաբույժ՝ 1956-ից: Աշխ-ները վերաբերում են տեղային անզգայացմանը, սրտի ու թոքերի վիրահատության ժամանակ հիպոթերմիայի և արյան արհեստ. շրջանառության կիրառմանը, վիրաբուժության մեջ պոլիմերների օգտագործմանը:

Լենինյան (1960), ԽՍՀՄ Պետ. (1970) մրց.-ներ:

ՎԻՇՆԵՎՍԿԻ Ալեքսանդր Վասիլևիչ (1874–1948), ռուս. վիրաբույժ: ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1946): Ա. Ա. *Վիշնևսկու* հայրը: Մշակել է տեղային անզգայացման մեթոդներ, նովոկաինային շրջափակման և յուղաբալասան. վիրակապով (Վ.-ու քսուկ) բորբոք. և թարախ. հիվանդությունների բուժումը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942):

ՎԻՇՆՅՈՎԱ Դիանա Վիկտորովնա (ծ. 1976), բալետի ռուս. արտիստուհի: ՌԴ ժող. արտիստ (2007): 1995-ից՝ Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնի մենապարուհի (Ժիզել՝ Ա. Ադանի «Ժիզել», Կիտրի՝ Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ», Ռայմոնդա՝ Ա. Կ. Գլազունովի «Ռայմոնդա», ևն): Կատարել է նաև Ջ. Բալանչինի, Ջ. Ռոբբինսի, Կ. Մակմիլլանի և ուր. բալետների գլխ. դերապարերը: Միլանի «Լա Սկալա», Փարիզի և Բեռլինի օպեր. թատրոնների հրավիրյալ մենապարուհի, 2005-ից՝ «Ամերիկան բալլե թիեթրի» առաջատար պարուհի: ՌԴ Պետ. մրց. (2000):

ՎԻՇՆՈՒ, հինդուիզմի գերագույն աստվածություններից, աշխարհակարգի պահապանը: Վ. *Բրահմայի* և *Շիվայի* հետ կազմում է աստված. եռյակը (տրիմուրտի): Հնդ. էպոսում և պուրաններում Վ. նույնացվել է Ռամի, Կրիշնայի և մարդակերպ ու կենդանակերպ այլ կերպարների հետ, որոնցից ձևավորվել է ավատարների համակարգը: ***Վիշնուականության*** գերագույն աստվածն է:

ՎԻՇՆՈՒԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, հինդուիզմի 2 գլխ. ուղղություններից (շիվայականության հետ). տարածվել է գլխավորապես Հս. Հնդկաստանում: Վիշնուականները պաշտում են *Վիշնուին*՝ որպես գերագույն ամենակարող աստծու: Վ.-յան հիմն. ուղղություններից է ***կրիշնայականությունը***:

ՎԻՈՏՏԻ (Viotti) Ջովանի Բատիստա (1755–1824), իտալացի ջութակահար, կոմպոզիտոր: Ֆրանս. ջութակի դպրոցի հիմնադիրներից: Հեղինակ է ջութակի երկերի, կամեր-գործիք. անսամբլների, ջութակի և նվագախմբի կոնցերտների և այլ գործերի: 1950-ից Վերչելլի ք.-ում (Իտալիա) անցկացվում է Վ.-ի անվ. միջազգ. մրցույթ:

ՎԻՉԵՆՅԱՆ Սերովբե (կեղծանունը՝ Սերվիչեն, 1815–1897), բժիշկ, հաս. գործիչ: 1846–76-ին աշխատել է Կ. Պոլսի բարբառագույն բժշկ. դպրոցում, եղել դատ. բժշկության առաջին պրոֆ.-ը: Հիմնել է բժշկ. «Գազեթ մեդիկալ դ'Օրիան» (ֆրանս., 1849–52) թերթը: Եղել է Կ. Պոլսի Կայսեր. բժշկ. ընկ-յան հիմնադիրներից, Քաղաք. բժշկ. բարձրագույն խորհրդի նախագահ, պալատ. բժիշկ:

ՎԻՉԵՆՅԱ (Vicenza), ք. Իտալիայի Վենետիկի մարզում, համանուն գվ.-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 113,3 հզ. (2013): Կան հին-հռոմ. թատրոնի, կամրջի, ջրանցքի, գոթ. ոճի Սան Լորենցո (1280–1344) եկեղեցու ավերակներ: Շարտ. հուշարձաններից են Անդրեա Պալլադիոյի կառույցները՝ բազիլիկը (Ռաջոնե պալատի վերակառուցումը 1549–1614), Տիենե, Կիերիկատի (երկուսն էլ կառուցվել են 1550-ից) պալատները, Օլիմպիկո թատրոնը (1580–85, ավարտել է Շարտ. Վ. Սկամոցցին) ևն, որոնք Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում են:

ՎԻՊԱԿ, գեղ. գրկ-յան էպիկ. ժանր: Գործող անձանց թվով, կյանքի ընդգրկման ծավալով միջին տեղ է գրավում ***վեպի*** ու ***պատմվածքի*** միջև, բայց կարող է ունենալ երկուսին էլ բնորոշ ժանր. առանձնահատկություններ, այդ իսկ պատճառով հաճախ դժվար է դրանք իրարից սահմանազատելը:

ՎԻՊԱԿԱՆ ԵՐԳԵՐ, երաժշտ. բանահյուսության բաժին: Ընդգրկում է վիպ. բովանդակության ինքնուրույն երգեր, նաև էպոսի ու սիրային-հերոս. պատումների եղանակավոր հատվածներ: Երգեցողությունը պատմական է, կատարվում է նվագակցությամբ: Հայտնի են «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելին վերագրվող «Ծամթելի և լողվորդի» մասին մի շարք երգերի, «Կարոս խաչ» պատումի եղանակները, «Սասունցի Դավթից» պահպանված շուրջ 30 երգվող հատվածներ, «Մոկաց Միրզա» երգ.-բալլադը և այլ Վ. ե.: Նոր ժամանակներում նույնպես ստեղծվել են բազմաթիվ պատմ. ու պատմակենցաղ. երգ.-պատումներ:

ՎԻՊԱՄԱՆԲ, հեթանոս. շրջանի հայ ժող. պատմավիպ. գործերի (էպոս, վիպերգ) ընդհ. անվանումը: Վ. պատմել և մասամբ երգել են ժող. երգիչ-գուսանները (վիպասան)՝ փանդիռի և այլ երաժշտ. գործիքների նվագակցությամբ: Վ.-ի հնագույն նմուշները գրառել է Մովսես Խորենացին:

ՎԻՊԵՐՆԵՐ, տես *Իժեր*:

ՎԻՋԱՅՎԱԴԱ, Բեզվադա, ք. Հնդկաստանի Անդհրա Պրադեշ նահ.-ում՝ Կրիշնա գետի ափին: Բն.՝ 1,05 մլն (2011):

ՎԻՍԲԱԴԵՆ (Wiesbaden), ք.-գետային նվինգստ Գերմանիայում՝ Հռենոսի ափին, Հեսսեն երկրամասի վարչ. կենտրոնը: Բն.՝ 278,9 հզ. (2011): Ցեխաբուժ. առողջավայր է:

ՎԻՍԵՆՏԵ, Վիսենտի (Vicente), Ժիլ (իսպ.՝ Խիլ, մոտ 1470–մոտ 1537), պորտուգալացի բանաստեղծ, դրամատուրգ: Գրել է պորտուգ. և իսպ.: Պորտուգ. թատրոնի հիմնադիրը: Հեղինակ է «Աուտո այցելության մասին կամ Հովվի մենախոսությունը» (1502), «Ֆարս Ինես Պերեյրայի մասին» (1523), «Կրոնավորը Բեյրայից» (1526) և եկեղեցին ու սոցիալ. արատները քննադատող այլ պիեսների:

ՎԻՍԵՐԹ ՀՈՈՖԹ (Visser't Hooft) Վիլեմ Ադոլֆ (1900–1985), նիդեռլանդացի կրոն.

և քաղ. գործիչ, բարեփոխիչ պաստոր (բողոք. քին.): Եկեղեցիների համաշխ. միության հիմնադիրն ու գլխ. քարտուղարը:

ՎԻՍԼԱ (Wisła), Լեհաստանի ամենամեծ գետը: Երկ.՝ 1092 *կմ*, ավազանը՝ 198,5 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1080 *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Արմ. Կարպատներից, թափվում է Գդանսկի ծովախորշը և Վ.-ի ծոցը: Ամռանը և ձմռանը հաճախակի են վարարումները: Վ.-ի և նրա վտակների հոսքը կարգավորելու համար կառուցվել են ջրամբարներ, ջրէկներ: Ջրանցքներով միացած է Դնեպրի, Օդրայի, Նեմանի հետ: Վ.-ի ափերին են Կրակովը, Վարշավան, Պլոցկը, Տորունը, դելտայում՝ Գդանսկը:

ՎԻՍԼԱՅԻ ԾՈՑ, ծովալճակ Բալթիկ ծովի Գդանսկի ծովախորշում՝ Լեհաստանի ափերի մոտ: ՌԴ ափամերձ հատվածը կոչվում է Կալինինգրադի ծոց: Երկ.՝ 90 *կմ*, լայն.՝ 2–25 *կմ*, խոր.՝ 3–5 *մ*: Նվինգստները՝ Կալինինգրադ, Բալթիյսկ (ՌԴ):

ՎԻՍԼԻՑԵՆՈՒՍ (Wislicenus) Յոհաննես (1835–1902), գերմանացի քիմիկոս-օրգանիկ: Աշխ-ները վերաբերում են քիմ. կառուցվածքի և տարածաքիմիայի տեսությանը: Բացահայտել է երկրչփ. իզոմերիան:

ՎԻՍԿԻ (անգլ.՝ whiskey, whisky), սպիրտ. խմիչք (սպիրտի 40–50 ծավալ. %), որն ստանում են գարու ածիկից, աշորայի կամ եգիպտացորենի խմորված քաղցրահյութը թորելով:

ՎԻՍԿՈԶ (ուշ լատ.՝ viscosus – մածուցիկ, կպչուն), հիմն. թաղանթանյութի և ծծմբածխածնի փոխազդեցության արգասիքի՝ թաղանթանյութի քսանտոգենատի բարձրմածուցիկ լուծույթը նատրիումի հիդրօքսիդի նոսր ջր. լուծույթում: Կիրառում են գլխավորապես վիսկոզային մանրաթել, թաղանթներ (ցելոֆան), արհեստ. կաշի (կիրզա) ստանալու համար:

ՎԻՍԿՈԶԻՆ, մասնակիորեն մաքրած նավթային քսայուղ: Բարձր մածուցիկության, լավորակ յուղ է, կանխում է մետաղների կոռոզիան: Օգտագործում են շոգեմքենաների գլանները, մխոցակոթերը, մղակները յուղելու համար, նաև դիզել. շարժիչներում:

ՎԻՍԿՈՆՍԻՆ (Wisconsin), նահց ԱՄՆ հս-ում: Տարածքը՝ 145 հզ. *կմ*^{2}, բն.՝ 5,76 մլն (2014): Վարչ. կենտրոնը՝ Մադիսոն:

ՎԻՍԿՈՆՏԻ (Visconti) Լուկինո (1906–1976), իտալացի ռեժ.: Նեոռեալիզմի հիմնադիրներից: Նկարահանել է «Հողը ցնցվում է» (1948), «Ամենագեղեցիկը» (1951), «Ռոկկոն և նրա եղբայրները» (1960), «Աստվածների կործանումը» (1969), «Մահ Վենետիկում» (1971), «Լյուդվիգ» (1972), «Ընտանեկան դիմանկար ինտերիերում» (1974), «Անմեղը» (1976) և այլ ֆիլմեր, որոնց հիմն. թեմաներից են արվեստագետի և մշակույթի, մարդու և ժամանակի խնդիրները:

ՎԻՍՈՆՈՎԻՉ Վլադիմիր Կոնստանտինովիչ (1854–1912), ուկրաինացի ախտաբան-անատոմ, համաճարակաբան և բակտերիաբան: Ի. Ի. *Մեչնիկովի* հետ մշակել է ռեթիկուլոէնդոթելային համակարգի վերաբերյալ ուսմունքը: Աշխ-ները վերաբերում են սիֆիլիսի և տուբերկուլոզի ախտաբան. անատոմիային, մի շարք վարակիչ հիվանդությունների իմունիտետին և համաճարակաբանությանը:

ՎԻՍՈՑԿԻ Վլադիմիր Սեմյոնովիչ (1938–1980), ռուս բանաստեղծ, դերասան, երգերի հեղինակ և կատարող: Գրել է ողբերգա-խոստովան. բանաստեղծություններ, երգիծ. և սատիր. երգեր, բալլադներ («Նյարդ», 1981, «Ես, իհարկե, կվերադառնամ», 1988, ժող.-ներ): 1964-ից՝ Տագանկայի դրամայի և կոմեդիայի թատրոնի (Մոսկվա) դերասան (Խլոպուշա՝ «Պուգաչով»՝ ըստ Ս. Ա. Եսենինի, Համլետ՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», Լոպախին՝ Ա. Պ. Չեխովի «Բալենու այգին», ևն): Նկարահանվել է «Ուղղահայաց», «Կարճ հանդիպումներ», «Հանդիպման վայրը փոխել չի կարելի» (հեռուստաֆիլմ), «Փոքր ողբերգություններ» և այլ ֆիլմերում: ԽՍՀՄ Պետ. մրց. (1987, հետմահու):

ՎԻՍՊՅԱՆՍԿԻ (Wyspiański) Ստանիսլավ (1869–1907), լեհ դրամատուրգ, նկարիչ, թատեր. գործիչ: Դրամաներում («Լեգենդ», 1897, «Հարսանիք», 1901, ևն) օգտագործել է «բաց ավարտի» ոճային տարրեր: Հեղինակ է դիմանկարների, բնապատկերների, վիտրաժների էսքիզների (այդ թվում՝ Կրակովի Վավելի տաճարի, 1900–02), գրքերի ձևավորումների («Իլիական», 1903, ևն):

ՎԻՍՏՈՆ, Ուիստոն (Whiston), եղբայրներ, **Գեորգ և Գուլիելմուս**, XVIII դ.-ի անգլիացի հայագետներ: 1736-ին գրաբարից լատ. են թարգմանել ու հրատարակել Սիմեոնես Խորենացու «Հայոց պատմությունն» ու նրան վերագրված «Աշխարհացույցը»:

ՎԻՎԱԼԴԻ (Vivaldi) Անտոնիո (1678–1741), իտալացի կոմպոզիտոր, ջութակահար: Գրել է կոնցերտներ (շուրջ 350)՝ մենակատար գործիքների (ջութակի՝ 230-ից ավելի) և նվագախմբի համար: Ծրագր. երաժշտության («Տարվա եղանակներ», շարք՝ ջութակի և լար. նվագախմբի համար, ևն), նաև Վենետիկի օպեր. դպրոցի («Ներոն», 1715, «Օլիմպիադա», 1734, ևն) վարպետներից: Հեղինակ է նաև կանտատների, սերենադների, մոտետների, սաղմոսների, մագնիֆիկատների և այլ գործերի:

«ՎԻՎԱՄԵԼ–ՄՏՍ» ՓԲՐ, բջջ. օպերատոր, որը բջջ. կապի, շարժական ինտերնետի և հեռահաղորդակցության ոլորտի մի շարք այլ ծառայություններ է մատուցում ՀՀ ողջ տարածքում: Հիմնադրվել է 2004-ին, հիմնադիր, գլխ. տնօրեն՝ Ռալֆ *Հիրիկյան*: Կազմ-յան բաժնետոմսերի 80 %-ը պատկանում է ռուս. ՄՏՍ խմբին, իսկ 20 %-ը՝ լիբանանյան Fattouch Group-ին:

ՎԻՎԱՐԻՈՒՄ (լատ.՝ vivarium, < vivus – կենդանի), **կենդանակացարան**, շինություն՝ նախատեսված լաբորատոր կենդանիներ պահելու (երբեմն՝ բազմացնելու) համար:

ՎԻՎԵԿԱՆԱՆԴԱ Սվամի (Նարենդրանաթ Դատտա՝ 1863–1902), հնդիկ փիլ-նորհինդուիստ, կրոն. բարեփոխիչ և հաս. գործիչ: Ձգտելով համադրել Արևմուտքի և Արևելքի հոգևոր ավանդույթները՝ հիմնադրել է «Ռամակրիշնայի առաքելություն» (1897) բարենորոգչ. ընկ-ը, որի նպատակը մեկ միասն. կրոնի մասին ուսմունքի տարածումն էր:

ՎԻՎԵՍ Ի ՍԻՄԻԼԻԱ (Vives i Sicilia) Ժոան Էնրիկ (ծ. 1949), Ուրժելի եպս.՝ 2003-ից, Անդորրայի Հանրապետության կառավարիչը (Ֆրանսիայի նախագահի հետ):

ՎԻՎԵՐԱՋԳԻՆԵՐ (Eupleridae), գիշատիչների կարգի կաթնասունների ընտանիք: Սարմնի երկ.՝ 60–85, պոչինը՝ 31–48 *սմ*: Հայտնի է 20 սեռ (վիվերներ, գենետներ, մանգուստներ ևն), մոտ 40 տեսակ՝ Փոքր, Առաջավոր և Հվ. Ասիայում, Աֆրիկայում, Հվ. և Հվ-արլ. Եվրոպայում: Մի շարք Վ. որսակենդանի են: 34 տեսակ գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՎԻՎԵՐՆԵՐ (Viverra), **ցիվետներ**, վիվերազգիների ընտանիքի կաթնասունների սեռ: Մարմնի երկ.՝ 60–85, պոչինը՝ 31–48 *սմ*: 4–5 տեսակ ապրում է Հվ. և Հվ-արլ. Ասիայում: Որսակենդանի են: 1 տեսակ գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՎԻՏԱԼԻԶՄ (լատ.՝ vitalis – կենսական, կենդանի, կենարար), իդեալիստ. հոսանք կենսբ-յան մեջ, որն ընդունում էր օրգանիզմներում հատուկ, ոչ մատերիական կենսասնյութի գոյությունը: Վ.-ի տարրերը գոյություն են ունեցել Արիստոտելի փիլ-յան մեջ (Էնտելեխիա): Առավել հայտնի են XVII–XIX դդ.-ի վիտալիստներ Յ. վան Հելմոնտը, Գ. Շտալը, Ի. Մյուլլերը, Խ. Դրիշը:

ՎԻՏԱՄԻՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, հիվանդագին վիճակ, որն առաջանում է, երբ օրգանիզմում վիտամինի ծախսը գերազանցում է ընդունած քանակը (անվիտամինություն, թերվիտամինություն):

ՎԻՏԱՄԻՆՆԵՐ (լատ.՝ vita – կյանք), քիմ. տարբեր ցածրմոլ. օրգ. միացություններ, որոնք աննշան քանակներով անհրաժեշտ են կենդանի օրանիզմների կենսագործունեության և բնականոն նյութափոխանակության համար: Շատ Վ. կոֆերմենտների նախորդներն են, որոնց բաղադրության մեջ մասնակցում են տարբեր ֆերմենտ. ռեակցիաների: Մարդու և կենդանիների օրգանիզմներում Վ. չեն սինթեզվում կամ էլ սինթեզվում են ոչ բավարար քանակներով, այդ պատճառով դրանք ստանում են սննդի միջոցով: Վ.-ի աղբյուր են բույսերը: Որոշ Վ. առաջանում են աղիների միջավայրում: Վիտամինազուրկ սննդի երկարատև օգտագործումն առաջացնում է հիվանդություններ (հիպո- և ավիտամինոզներ): Որպես դեղորայք. պատրաստուկներ օգտագործվող շատ Վ. ստանում են քիմ. կամ մանրէաբան. սինթեզով: Հիմն. Վ. են՝ A_1 (ռետինոլ), B_1 (թիամին), B_2 (ռիբոֆլավին), B_3 (պանտոտենաթթու), B_6 (պիրիդոքսին), B_{12} (ցիանկոբալամին), B_c (ֆոլաթթու), C (ասկորբինաթթու), D (կալցիֆերոլներ), E (տոկոֆերոլներ), H (բիոտին), PP (նիկոտինաթթու), K_1 (ֆիլոքինոն):

ՎԻՏԳԵՆՇՏԱՅՆ (Wittgenstein) Լյուդվիգ (1889–1951), ավստրիացի փիլ.: Վերլուծ. *փիլիսոփայության* ներկայացուցիչ: Պ. *Վիտգենշտայնի* եղբայրը: 1929-ից՝ Անգլիայում: «Տրամաբանական-փիլիսոփայական տրակտատ» (1921) աշխ-յան մեջ առաջադրել է տրամաբ. ատոմիզմի գիտակարգ և մաթ. տրամաբ-յան լեզվի օրինակով «իդեալական» արհեստ. լեզվի ստեղծման ծրագիր: Վ. փիլ-յունը համարել է լեզվի պարզաբանմանն ուղղված գործունեություն: 1930-ական թթ-ի կեսերին մշակել է «լեզվական խաղերի» հայեցակարգ՝ հիմնվելով լեզվ. իմաստների պրագմատիկ-համատեքստ. բնույթի ըմբռնման վրա:

ՎԻՏԳԵՆՇՏԱՅՆ Պաուլ (1887–1961), ավստրիացի դաշնակահար: Լ. *Վիտգենշտայնի* եղբայրը: ԱՀՊ-ի ժամանակ զրկվել է աջ ձեռքից, սակայն տիրապետել է ձախ ձեռքի վիրտուոզ տեխնիկային: Վ.-ի համար գործեր են գրել Մ. Ռավելը (Կոնցերտ), Ս. Ս. Պրոկոֆևը (Դաշնամուրի 4-րդ կոնցերտը), նաև Ռ. Շտրաուսը, Պ. Հինդեմիթը, Բ. Բրիտենը և ուր.:

ՎԻՏԵԲՍԿ, վոմ Բելառուսում, համանուն մարզի վարչ. կենտրոնը, նվինգստ Արմ. Դվինա գետի ափին: Բն.՝ 377,6 հզ. (2010): Հիմնադրվել է XI դ-ում:

ՎԻՏԵԲՍԿԻ ՄԱՐԶ, Բելառուսի հս-արլ-ում: Տարածքը՝ 40,1 հզ. *կմ²*, բն.՝ 1,2 մլն (2016): Վարչ. կենտրոնը՝ ***Վիտեբսկ***:

ՎԻՏԻ ԼԵՎՈՒ (Viti Levu), կղզի Խաղաղ օվկ-ում, Ֆիջի կղզեխմբի ամենամեծ կղզին: Տարածքը՝ 10,5 հզ. *կմ²*: Բարձր.՝ մինչև 1322 *մ*: Գլխ. ք-նվինգստ-ը՝ ***Սուվա***:

ՎԻՏԻԳ (Wittig) Գեորգ (1897–1987), գերմանացի քիմիկոս-օրգանիկ: Աշխ-ները վերաբերում են ֆոսֆորօրգ. միացությունների քիմիային: Սորբոնի (1957), Տյուբինգենի և Համբուրգի (1962) համալսարանների պատվ. դ-ր: Բացահայտել է (1954) կարբոնիլային միացություններից և ալկիլհալենֆոսֆորաններից օլեֆինների ստացման եղանակ (Վ.-ի ռեակցիա): Նորելյան մրց. (1979, Հ. *Բրաունի* հետ):

«ՎԻՏՅԱԶ», 1. առագաստապտուտակ. ռազմանավ, որով 1871-ին Ն. Ն. Միկլուխո-Մակլայը հասել է Նոր Գվինեա կղզի: 2. Առագաստապտուտակ. ռազմանավ (կառուցվել է 1886-ին, ջրատարողությունը՝ 3200 *տ*): 1886–89-ին Ս. Օ. Մակարովի ղեկավարությամբ կատարել է շուրջերկրյա նավարկություն և օվկիանոսագր. հետազոտություններ: 3. ԽՍՀՄ ԳԱ օվկիանոսագիտ-յան ինստ-ի ԳՀ նավ. կառուցվել է 1948-ին, ջրատարողությունը՝ 5710 *տ*: 1949–68-ին եղել է խորհրդ. արշավախմբային նավատորմի հրամանատար-նավ: Մինչև 1976-ը կատարել է 55 նավարկություն Հեռավորարլ. ծովերում, Խաղաղ և Հնդ. օվկ-ներում:

ՎԻՏՈՎՏ, **Վիտաուտաս** (1350–1430), լիտվացի մեծ իշխան՝ 1392-ից: Վ.-ի օրոք լիտվ. տիրույթները հասել են մինչև Օկայի և Մոժայսկի վերին հոսանքները: Թաթարներից զավթել է Հվ. Պոդոլիան և իր տիրույթներն ընդարձակել մինչև Սև ծով: ***Գրյունվալդի ճակատամարտում*** (Յագայլոյի հետ) ջախջախել է գերմանացի ասպետներին:

ՎԻՏՈՐԻԱ, (Vitoria), ք. Իսպանիայի հս-ում, Բասկերի Երկիր ԻՄ վարչ. կենտրոնը: Բն.՝ 242 հզ. (2014): Հիմնադրվել է VI դ-ում:

ՎԻՏՈՐԻԱ, (Vitória), ք-նվինգստ Բրազիլիայի հվ-արլ-ում, Էսպիրիտու Սանտու նահց-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 355,8 հզ. (2014): Հիմնադրվել է 1551-ին:

ՎԻՏՍ (Witt) Կատարինա (ծ. 1965), գերմանացի մարզուհի (գեղասահք): Ձմեռ. օլիմպ. խաղերի (1984, 1988), աշխարհի (1984, 1985, 1987, 1988), Եվրոպայի (1983–1988) չեմպիոնն՝ անհատական ծրագրով:

ՎԻՏՏԵ Սերգեյ Յուլևիչ (1849–1915), ռուս. պետ. գործիչ (ծագումով՝ գերմանացի): 1892-ից՝ հաղորդակցության ճանապարհների, ապա՝ ֆինանսների նախարար: 1903-ից՝ նախարարների կոմիտեի, 1905–06-ին՝ ՆԽ նախագահ: 1905-ին՝ ռուս-ճապ.ն. հաշտության պայմանագիրը (տես ***Պորտսմուտի հաշտության պայմանագիր 1905***) կնքող պատվիրակության ղեկ.: Ճնշել է 1905–07-ի հեղ-յունը: Նրա առաջարկությամբ է հրապարակվել Հոկտ. 17-ի մանիֆեստը (տես ***Մանիֆեստ 1905-ի հոկտեմբերի 17-ի***):

ՎԻՏՏՈՐԻՆԻ (Vittorini) Էլիո (1908–1966), իտալացի գրող: Հեղինակ է «Սիցիլիական գրույցներ» (1941), «Մեսսինացի կանայք» (1949), Դիմադրության շարժմանը նվիրված «Մարդիկ և վատ մարդիկ» (1945) վեպերի, հրապարակախոս. նյութերի:

ՎԻՏՐԱԺ (ֆրանս.՝ vitrage, < լատ. vitrum – ապակի), **ապակենկար**, զարդապատկեր կամ թեմատիկ դեկորատիվ կոմպոզիցիա (պատուհանի, դռան վրա, նաև որպես ինքնուրույն պաննո) ապակուց կամ լուսաթափանցիկ այլ նյութից: Պատուհանների գունավոր Վ.-ները (օր.՝ գոթ. տաճարներում) ստեղծում են լույսի գունախաղ ***ինտերիերում***:

ՎԻՐԱԲՅԱՆ Ամատունի Սասունիկի (ծ. 1956), պատմաբան, խմբ.: Պատմ. գիտ. դ-ր (2001): 2001-ից՝ ***«Բանբեր Հայաստանի արխիվների»*** հանդեսի գլխ. խմբ., 2003-ից՝ Հայաստանի ազգ. արխիվի տնօրենն: Հեղինակ է «Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով. հասարակական-քաղաքական կյանքը (1945–1957 թթ.)» (2001) աշխ-յան: Կազմել և խմբագրել է «Ռուբեն Տեր-Մինասյան» (2011) ժող-ը: Մասնակցել է «Լեռնային Ղարաբաղը 1918–1923 թթ.» (ռուս., 1992), «Արամ Մանուկյան» (2009), «Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ» (Գ. Ավագյանի հետ, 1–3..., 2012..., 1-ական գրքով՝ անգլ.՝ 2013, թուրք. և ռուս.՝ 2014) և այլ ժող-ների կազմմանն ու հրատարակմանը: ՀՀ նախագահի մրց. (2014):

ՎԻՐԱԲՅԱՆ Ռիտա Թովմասի (ծ. 1938), անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (1991), պրոֆ. (1993): ՀՀ-ում առաջինն է մշակել անզգայացման մեթոդներ՝ նոր դեղամիջոցների (նուրբին, մորադոլ, ֆենաարիդին, տորադոլ) օգտագործմամբ:

ՎԻՐԱԲՅԱՆ Վանիկ Հրանտի (ծ. 1959), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (2008), պրոֆ. (2010): Աշխ-ները վերաբերում են ՀՀ (1918–20) ազգ-պետ. անվտանգության համակարգի ստեղծմանը, հայկ. հետախուզության, բանակի ու ՆԳՆ պատմությանը, 1918-ի վրաց-հայկ. պատերազմին ևն:

ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ Ալեքսանդր Միքայելյանի անվան, հիմնադրվել է 1975-ին՝ Սրտաբանության և սրտային վիրաբուժության ինստ-ի սրտային վիրաբուժության բաժանմունքի հիման վրա: Հիմն. խնդիրը որակյալ մասնագիտացված վիրաբուժ. օգնության կազմակերպումն է: Զբաղվում են նաև սիրտանոթ. համակարգի, ընդհ. վիրաբուժության, միկրովիրաբուժության, թոք., ուրոլոգ., նյարդավիրաբուժության, պրոկտոլոգիայի, վիրահատ. գինեկոլոգիայի, դիմածնոտ., քիթկոկորդականջի, ընդերադիտ. վիրաբուժության, օրթոպեդիայի և մնասվածքաբանության, վիրահատ. ռեպրոդուկտոլոգիայի հարցերով: Ինստ-ում ներդրվում և հաջողությամբ օգտագործվում են ախտորոշման և բուժման առավել արդյունավետ ժամանակակից միջոցներ: ԵՊԲՀ և ԱԱԻ կլինիկ. հենակետ է: Տնօրեններ՝ Ա. Միքայելյան, Համլետ Թամազյան, Արմեն Հարությունյան (2015-ից):

ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, **խիրուրգիա** (հուն.՝ cheirurgia < cheir – ձեռք և ergon – աշխատանք, գործողություն), կլինիկ. բժշկագիտ-յան և անասնաբուժության մասնաճյուղ. ուսումնասիրում է այն հիվանդությունները, որոնց բուժման հիմն. եղանակը վիրահատությունն է:

ՎԻՐԱԽՈՏ (Anthyllis), բակլազգիների (թիթեռնածաղկավորներ) ընտանիքի բազմամյա խոտաբույսերի կամ կիսաթփերի ցեղ: Հայտնի է 50 (20) տեսակ, ՀՀ-ում՝ 3՝ գրեթե բոլոր մարզերում, Երևանի շրջակայքում: Պտուղը պարունակում է սապոնիններ, աղաղանյութեր:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԼԵՌՆԱՇՂԹԱ, լ-շղթա Փոքր Կովկասի լեռն. համակարգում, Լոռու մարզում՝ Վրաստանի սահմանին: Երկ.՝ 73 *կմ*: Բարձր.՝ մինչև 2544 *մ*: (Լալվար լ.): Ձրբաժան է Խրամ և Դեբեդ գետերի միջև: Հս. լանջերը ծածկված են անտառ., հվ. լանջերը՝ լ-տափաստան., բարձրադիր մասերը՝ լ-մարգագետն. բուսականությամբ: Կան պղնձի և բազմամետաղների հանքավայրեր:

ՎԻՐԳԻՆԱ, **Վիրջինիա** (Virginia), նահց ԱՄՆ-ի արլ-ում: Բն.՝ 105,7 հզ. *կմ²*, բն.՝ 8,3 մլն (2014): Վարչ. կենտրոնը՝ ***Ռիչմոնդ***:

ՎԻՐԳԻՆՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ (Virgin Islands), փոքր կղզիների խումբ Վեստ Ինդիայում, Մեծ Բրիտանիայի (տարածքը՝ 153 *կմ²*, բն.՝ 25 հզ., վարչ. կենտրոնը՝ Ռոդ Թաուն) և ԱՄՆ-ի (տարածքը՝ 355 *կմ²*, բն.՝ 106,4 հզ. (2010), վարչ. կենտրոնը՝ Շառլոտա Ամալիա) տիրույթը:

ՎԻՐԻՈՆ, լիակատար ձևավորված վիրուս. մասնիկ, որը կազմված է նուկլեինաթթվից և սպիտակուց. թաղանթից (պատիճ): Վիրուսի գոյատևման արտաբջջ. հանգստացող ձև:

ՎԻՐԽՈՎ (Virchow) Ռուդոլֆ (1821–1902), գերմանացի ախտաբան-անատոմ: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1881): Առաջ է քաշել բջջ. ախտաբանության տեսությունը, որի համաձայն՝ ախտաբան. կենսընթացն առանձին բջիջների կենսունակության խանգարումների հանրագումար է: Նկարագրել է հիմն. ընդհ. ախտաբան. կենսընթացների ախտաբանաձևաբանությունը:

ՎԻՐՍԱԼԱԶԵ Սիմոն Բագրատիոնի (1908/09–1989), վրացի բեմանկարիչ: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1976): ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի անդամ (1975): Լենինգրադի ՕԲԹ-ում, Մոսկվայի Մեծ թատրոնում ձևավորել է Ս. Ս. Պրոկոֆևի «Քարե ծաղիկ» (1957), Ա. Դ. Մելիքովի «Լեգենդ սիրո մասին» (1961), Պ. Ի. Չայկովսկու «Շչելկունչիկ» (1966), Ա. Խաչատրյանի «Սպարտակ» (1968), նաև «Իվան Ահեղ» (1975, ըստ Ս. Ա. Պրոկոֆևի երաժշտության): ԽՍՀՄ Պետ. (1949, 1951, 1977), Լենինյան (1970) մրց-ներ:

ՎԻՐՏԱՆԵՆ (Virtanen) Արթուրի Իլմարի (1895–1973), ֆինն կենսաքիմիկոս: Տեխ. կենսաքիմիայի ֆինն. գիտ. դպրոցի հիմնադիր: Ստեղծել է (1928–29) կանաչ կերերի պահածոյացման մեթոդ: Մշակել է կաթի և կաթնամթերքի պահածոյացման մեթոդ, ստեղծել դրանց արդ. արտադր-յան նոր տեխնոլոգիա: Նորելյան մրց. (1945):

ՎԻՐՏՈՒԱԼ ՄԱՍՆԻԿՆԵՐ, միջանկյալ վիճակի մասնիկներ **դաշտի քվանտային տեսությունում** (ԴՔՏ), որոնք գոյություն ունեն δt կարճ ժամանակամիջոցում, և որը նրանց E էներգիայի հետ կապված է անորոշությունների առնչությամբ՝ $\delta t \approx \hbar/E$, որտեղ $\hbar$-ը ***Պլանկի հաստատունն*** է: ԴՔՏ-ի համաձայն՝ մասնիկների էլեկտրամագնիս. փոխազդեցությունն իրականացվում է տարբեր Վ. մ-ի փոխանակման հաշվին (օր.՝ լիցքավորված մասնիկների փոխազդեցության դեպքում՝ ***ֆոտոններով,*** թույլ փոխազդեցությունների դեպքում՝ հնարավոր միջանկյալ վեկտորական ***բոզոններով***):

ՎԻՐՈՒԲՈՎ Գրիգորի Նիկոլաևիչ (1843–1913), ռուս պոզիտիվիստ փիլ., քիմիկոս: 1864-ից՝ վտարանդի (Փարիզ): Հրատարակել է պոզիտիվիզմի միջազգ. հաստատության «Պոզիտիվ փիլիսոփայություն» պաշտոն. ամսագիրը (Է. Լիթրեի հետ, 1867–83): Վ.-ի խմբագրությամբ ծնևում

լույս է տեսել Ա. Գերցենի երկերի 1-ին ժող-ը (հ. 1–10, 1875–79):

ՎԻՐՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (լատ.՝ virulentus – թունավոր), տվյալ միկրոօրգանիզմի հիվանդածնության (ախտածնության) աստիճանը: Կախված է ազդակի վարակիչ հատկությունից և վարակված օրգանիզմի զգայունությունից: Մանրէների Վ. կիրառվում է վակցինաներ ստանալիս:

ՎԻՐՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գիտ-յուն *վիրուսների* մասին: Որպես ինքնուրույն գիտ-յուն՝ ձևավորվել է XX դ-ի կեսին: Ընդհ. Վ. ուսումնասիրում է վիրուսների ծագումը, կառուցվածքը, բազմացումը, կենսաքիմիան, գենետիկան: Բժշկ., անասնաբուժ. և գղտ. Վ. հետազոտում է ախտածին վիրուսները, նրանց վարակիչ հատկությունները, մշակում կանխարգելման, ախտորոշման և բուժման մեթոդներ: Վիրուսների գենետիկ. ապարատն ուսումնասիրող բաժինը սերտորեն կապված է մոլ. գենետիկայի հետ:

ՎԻՐՈՒՍՆԵՐ (լատ.՝ virus – թույն), մանրագույն ոչ բջջ. մասնիկներ՝ կազմված նուկլեինաթթվից (ԴՆԹ կամ ՌՆԹ) և սպիտակուց. թաղանթից (կապսիդ): Ցուպիկաձև են, գնդաձև ևն: Չափերը սովորաբար *մկմ*-ի հարյուրերորդական և տասներորդական մասն են կազմում: Հայտնագործել է Դ. Ի. *Իվանովսկին* 1892-ին (ծխախոտի խայտաբղետության Վ.): Վ. ներբջջ. մակաբույծներ են. բազմանալով միայն կենդանի բջիջներում՝ նրանք օգտագործում են բջջի ֆերմենտ. ապարատը և բջիջը պատրաստում հասուն վիրուս. մասնիկների՝ վիրիոնների սինթեզմանը: Տարածված են ամենուրեք: Առաջացնում են բույսերի, կենդանիների և մարդու հիվանդություններ: Մնացած կենդ. ձևերից կտրուկ տարբերվելով՝ Վ. մյուս օրգանիզմների նման ընդունակ են էվոլյուցիայի: Նրանց երբեմն առանձնացնում են որպես կենդ. աշխարհի հատուկ թագավորություն: Լայնորեն կիրառում են գենային ճարտարագիտ-յան և կոնցերոգենեզի մեջ:

ՎԻՅԻՆ Գեորգի Միխայլովիչ (1918–2001), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1990): 1936–69-ին՝ Ն. Պ. Խմելյովի ղեկավարած (1937-ից՝ Մոսկվայի Մ. Ն. Երմոլովայի անվ. թատրոն), 1969-ից՝ կինոդերասանի թատրոն-ստուդիաների դերասան: Նկարահանվել է «Տասներկուերորդ գիշեր», «Օպերացիա «Ի» և Շուրիկի այլ արկածները», «Կովկասի գերուհին», «Բալզամինովի ամուսնությունը», «Հաջողության ջենտլմեններ», «Մի քանի սիրային պատմություններ» և այլ ֆիլմերում:

ՎԻՔՐԻ (Vickrey) Ուիլյամ (1914–1996), ամերիկացի տնտեսագետ: Աշխ-ները վերաբերում են անհամաչափ տեղեկատվության տնտեսագիտ. տեսության զարգացման հարցերին:

Նոբելյան մրց. (1996, Ջ. *Միռլիսի* հետ):

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ (օսերեն՝ Զաուջիկաու, ինգուշերեն՝ Բուրու, 1931–44 և 1954–90-ին՝ Օրջոնիկիձե, 1944–54-ին՝ Զաուջիկաու), ք. ՌԴ-ում, Հս. Օսիայի վարչ. կենտրոնը Թերեք գետի ափին: Բն.՝ 312 հզ. (2009): Երկթղ. հանգույց է: Հիմնադրվել է 1784-ին՝ որպես ռուս. ամրոց:

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶԻ ՍՈՒԲԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ, XIX դ-ի հայկ. ճարտ. հուշարձան: Գմբեթավոր բազիլիկ է՝ կառուցված աղյուսով՝ քարե որմնախարսխի վրա: XIX դ-ի վերջին 2 նավ ավելացնելուց հետո բազիլիկը դարձել է հնգանավ, որը բացառիկ է հայկ. ճարտյան մեջ: Արմ. ճակատին կից երկհարկ զանգակատունը պսակված է 6-սյունանի ռոտոնդայով:

ՎԼԱԴԻՄԻՐ (Վիկտոր Մարկիանովիչ Սաբոդան, ծ. 1935), Կիևի և ողջ Ուկրաինայի մետրոպոլիտ՝ 1992-ից:

ՎԼԱԴԻՄԻՐ, ք. ՌԴ-ում, համանուն մարզի վարչ. կենտրոնը Կլյազմա գետի ափին: Բն.՝ 339,8 հզ.(2009): Հիմնադրվել է 1108-ին:

ՎԼԱԴԻՄԻՐ I ՍՎՅԱՏՈՍԼԱՎԻՉ (մոտ 942–1015), Նովգորոդի իշխան՝ 969-ից, Կիևի մեծ իշխան՝ 980-ից: *Սվյատոսլավի* կրտսեր որդին: Պատերազմել է պեչենեգների, Վոլգայի բուլղարների, Բյուզանդիայի և Լեհաստանի դեմ: Նրա օրոք՝ 988–989-ին, Ռուսիայում քրիստոնեությունն ընդունվել է որպես պետ. կրոն: Ռուս. դյուցազնավեպերում անվանվել է Կարմիր Արև:

ՎԼԱԴԻՄԻՐ II ՄՈՆՈՄԱԽ (1053–1125), Կիևի մեծ իշխան՝ 1113–25-ին: Վսեվոլոդ Յարոսլավիչի և Բյուզանդիայի կայսր Կոնստանտին Մոնոմախի (այստեղից էլ՝ Մոնոմախ անվանումը) դստեր որդին: 1113-ին Կիևում բռնկած ապստամբության ժամանակ տեղի բոյարների հրավերով դարձել է Կիևի իշխան, հաջողել է ժամանակավորապես միավորել ռուս. իշխանությունները: Իր «Խրատ»-ում որդիներին կոչ է արել ամրապնդել Ռուսիայի միասնությունը:

ՎԼԱԴԻՄԻՐ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՉ (1847–1909), ռուս մեծ իշխան, հետևազորի գեն. (1880): Ալեքսանդր II կայսեր 3-րդ որդին: 1881-ից՝ գվարդ. և Ս. Պետերբուրգի ռազմ. շրջանի զորքերի հրամ., 1884–1905-ին՝ գլխ. հրամ.: 1905-ի հունվ. 9-ին զենք կիրառելու հրաման է տվել:

ՎԼԱԴԻՄԻՐԻ ՄԱՐԶ, վտմ ՌԴ Կենտր. դաշն. օկրուգում: Տարածքը՝ 29,1 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,44 մլն (2009): Վարչ. կենտրոնը՝ *Վլադիմիր*: Ունի 16 շրջան, 23 քաղաք, 9 քտա: Կազմավորվել է 1944-ին: Գլխ. գետերը՝ Օկա և Կլյազմա:

ՎԼԱԴԻՄԻՐՈՎ Վասիլի Սերգեևիչ (1923–2012), ռուս մաթեմատիկոս: ՌԳԱ ակադ. (1970): Սոց. աշխ. հերոս (1983): Աշխ-ները վերաբերում են հաշվող. մաթ-ին, դաշտի քվանտ. տեսությանը, բազմաթիվ կոմպլեքս փոփոխականներով վերլուծ. ֆունկցիաների տեսությանը, մաթ. ֆիզիկայի հավասարումներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1953, 1987):

ՎԼԱԴԻՄԻՐՍԿԻ Լև Անատոլևիչ (1903–1973), խորհրդ. ծովակալ (1954): ՀՄՊ-ի ժամանակ Սևծովյան նավատորմի նավախմբի, 1943–44-ին՝ Սևծով. նավատորմի հրամ.: 1944–46-ին՝ Բալթյան նավատորմի նավախմբի հրամ.:

ՎԼԱԴԻՄԻՐ-ՍՈՒԶԴԱԼՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, խոշոր ավատատիր. պետ. կազմավորում Հս-արլ. Ռուսիայում X–XIII դդ-ում: X–XII դդ-ում՝ Ռոստով-Սուզդալյան իշխանություն՝ Կիևյան Ռուսիայի կազմում: Կենտրոնները՝ Ռոստով, Սուզդալ: XII դ-ի կեսից՝ մեծ իշխանություն: Կենտրոնը՝ Վլադիմիր (1157): 1238-ին ենթարկվել է մոնղոլ-թաթար. արշավանքներին: XIII–XIV դդ-ում Վլադիմիրի մեծ իշխանի տիտղոսը Հս-արլ. Ռուսիայում համարվում էր գլխավորը:

ՎԼԱԴԻՎՈՍՏՈԿ, ք. ՌԴ-ում, Պրիմորիեի երկրամասի վարչ. կենտրոնը, նվինգստ Խաղաղ օվկ-ի ափին: Բն.՝ 578,6 հզ. (2009): ՌԴ Խաղաղօվկիանոս. նավատորմի հենակայանն է:

ՎԼԱՍՈՎ Ալեքսանդր Վասիլևիչ (1900–1962), ռուս. ճարտ.: Կիևի (1944–50) և Մոսկվայի (1950–55) գլխ. ճարտ.: Կիևում ղեկավարել է Կրեշչատիկ պողոտայի (1945–47, շին-յունը՝ 1947), Մոսկվայում՝ Վ. Ի. Լենինի անվ. մարզադաշտի (1955–56) կառուցապատումը: ԽՍՀՄ Պետ. (1950), Լենինյան (1959) մրց-ներ:

ՎԼԱՍՈՎ Անատոլի Ալեքսանդրովիչ (1908–1975), ռուս. ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են պլազմայի ֆիզիկային: Առաջարկել է պլազմայի համար կինետիկ հավասարում (կոչվել է Վ.-ի անվամբ): Լենինյան մրց. (1970):

ՎԼԱՍՈՎ Անդրեյ Անդրեևիչ (1901–1946), ռուս. զորահրամ., գեն-լեյտ. (1942): ՀՄՊ-ի ժամանակ՝ կորպուսի և բանակի հրամ., Վոլխովի ռազմաճակատի գլխ. հրամ-ի տեղակալ, 2-րդ Հարված. բանակի (Վոլխովի ռազմաճակատ) գլխ. հրամ.: 1942-ի գարնանը հայտնվել է շրջափակման մեջ և գերի ընկել: Գլխավորել է ռազմագերիներից կազմված «Ռուսաստանի ժողովուրդների ազատագրության կոմիտեն» և «Ռուսական ազատագրական բանակը»: 1945-ի մայիսին գերեվարել են խորհրդ. զորքերը: ԽՍՀՄ Գերագույն դատարանի Ռազմ. կոլեգիայի դատավճռով կախաղան է բարձրացվել:

ՎԼԱՍՈՎ Յուրի Պետրովիչ (ծ. 1935), ռուս մարզիկ (ծանրամարտ): ԽՍՀՄ ս. վ. վ. (1959): Օլիմպ. խաղերի (1960), աշխարհի, Եվրոպայի և ԽՍՀՄ (1959–64) բազմակի չեմպիոն, ծանր քաշի աշխարհի բազմակի ռեկորդակիր: Հեղինակ է «Հաղթել ինքդ քեզ» (1964), «Չինաստանի հատուկ շրջան» (1973), «Ուժի արդարություն» (1989), «Հրե խաչ» (1991) և այլ գրքերի:

ՎԼԱՍՈՎ (Վլասյան) Վաչագան Հրաչյայի (1922–2003), գեն-մայոր (1971): 1942-ի փետր-ից 1945-ի հունիսը մասնակցել է ՀՄՊ-ին: 1945–56-ին ծառայել է Այսրկովկասյան, 1959–78-ին՝ Թուրքեստանյան ռազմ. օկրուգում: Ավմա Աթայի համազորային հրամ. ուսումնարանի պետ (1970–1978): ԽՍՀՄ Կարմիր աստղի (1967), ՀՄՊ 2-րդ աստիճանի (1984) և այլ շքանշաններ:

ՎԼԱՍՈՎ Վասիլի Զախարովիչ (1906–1958), շին. մեխանիկայի բնագավառի ռուս. գիտնական: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1953): Աշխ-ները վերաբերում են շին. նյութերի դիմադրությանը, մեխանիկայի, առաձգականության տեսությանը ևն: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1950):

ՎԼՈՑԼԱՎԵԿ (Wloclawek), ք. Լեհաստանում, համանուն վոյեվոդության վարչ. կենտրոնը Վիսլա գետի ափին: Բն.՝ 123 հզ. (2014):

ՎԼՏԱՎԱ (Vltava), գ. Չեխիայում, Լաբայի (Էլբայի) ձախ վտակը: Երկ.՝ 446 *կմ*, ավազանը՝ 28 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 142 *մ*^{3}/վ: Նավարկելի է 84 *կմ*: Վ.-ի ափին է *Պրահան*:

ՎԿԱ, 1. նահատակ, մարտիրոս, քրիստ. հավատի համար զոհված անձ (տես *Մարտիրոսություն*): 2. Իրավունքում՝ անձ, որը նախաքննության մարմինների կամ դատարանի կանչով ցուցմունք է տալիս քր. կամ քաղաքաց. գործի վերաբերյալ իրեն հայտնի փաստերի մասին:

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, միջնադար. գր. ժանր, քրիստոնյա նահատակներին նվիրված պատում: Առաջացել է II–III դդ-ում՝ քրիստոնյաների դեմ ուղղված հալածանքների ժամանակ և գոյատևել մինչև

XVIII դ.: Պահպանվել են 200-ից ավելի արձակ ու չափածո Վ.-ներ (Գրիգոր Լուսավորչի, Հռիփսիմյանց կույսերի, Շուշանիկի, Վահան Գողթանացու Վ.-ները ևն):

ՎԿԱՅԱՐԱՆ, սբ վկաների նահատակման, թաղման տեղում կամ մասունքների վրա կառուցած շինություն: Առաջին Վ.-ները կիսագետնափոր, թաղածածկ դամբարաններ էին, որոնց վրա կառուցվել են եկեղեցիներ (Էջմիածնի Սբ Հռիփսիմե, Սբ Գայանե, Ամարասի և այլ վանքեր): V դ.-ից խոշոր չափերի բազիլիկ և գմբեթավոր հորինվածքներով կառույցներ են:

ՎՀՈՒԿ, մարդկանց և կենդանիներին վնասող գերբն. կարողություններով օժտված, դիվային «պիղծ ուժերին» ծառայող չար կախարդուհի ժող. պատկերացումներում: Կաթոլիկ եկեղեցին Վ.-ներին հռչակել է հերետիկոսներ, նրանց համար սահմանել տանջանք ու մահապատիժ: Վ.-ները սովորաբար պատկերվել են այլանդակ պառավի կերպարանքով, որը կարող է ընդունել հրապուրիչ գեղեցկուհու տեսք: Վ.-ի մասին ստեղծվել են բազմաթիվ առասպելներ ու զրույցներ, որոնք արտացոլվել են գրկ-յան մեջ:

ՎՃԻՌ (դատական), 1-ին ատյանի դատարանի որոշումը, որով քաղաքաց. գործը լուծվում է ըստ էության: Վ. կայացվում է գործի քննության ավարտից հետո: Վ.-ներն ուժի մեջ են մտնում անմիջապես դրանց հրապարակումից հետո:

ՎՃՌԱԲԵԿՈՒԹՅՈՒՆ, օրինական ուժի մեջ չմտած դատավճիռների և վճիռների գանգատարկումն ու բողոքարկումը վերադաս վճռաբեկ դատարանին և, ըստ այդ գանգատների ու բողոքների, դատ. գործի քննությունը՝ 1-ին ատյանի կայացրած դատավճիռների ու վճիռների օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու նպատակով:

«ՎԱՂ ՊՐԻՆՏ», հրտչ-յուն, հիմնադրվել է 2001-ին Երևանում: Հիմնադիր-տնօրենն՝ Վահրամ Մնացականյան:

ՎԱՅԱՋԵՄՍԿԻ Պյոտր Անդրեևիչ (1792–1878), իշխան, ռուս բանաստեղծ, գրաքննադատ, պետ. գործիչ: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1841): 1856–58-ին ղեկավարել է Գրաքննության գլխ. վարչությունը: Հեղինակ է «Հին ծոցատետր» (1813–48) հուշագրության: Որպես գրաքննադատ՝ մեծ ազդեցություն է ունեցել ռուս. գեղագիտ. ռոմանտիզմի ձևավորման վրա:

ՎԱՅԼԲԵ Ելենա Վալերևնա (ծ. 1968), ռուս. մարզուհի (դահուկավազք): ԽՍՀՄ ս. վ. վ. (1989): Զմեռ. օլիմպ. խաղերի (1992, 1994, 1998), աշխարհի (1989, 1991, 1993, 1995, 1997) չեմպիոն դահուկավազքի տարբեր ձևերում: Աշխարհի գավաթի (1989, 1992, 1995, 1997) հաղթող: 2010-ից՝ Ռուսաստանի դահուկավազքի ֆեդերացիայի նախագահ:

ՎԱՅԱՏԿԱ, գետ ՌԴ եվրոպ. մասում, Կամայի աջ վտակը: Երկ.՝ 1314 *կմ*, ավազանը՝ 129 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 890 *մ*^{3}/*վ*: Լուղարկելի է: Նավարկելի է շուրջ 700 *կմ*, գարնանը՝ շուրջ 1000 *կմ*:

ՎՅՈԼԵՐ (Wöhler) Ֆրիդրիխ (1800–1882), գերմանացի քիմիկոս, ժամանակակից օրգ. քիմիայի հիմնադիրներից: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1853): Անօրգ. նյութերից սինթեզել է (1824) առաջին օրգ. միացությունը և հաստատել (1828) միզանյութի հետ նրա նույնությունը: Վ.-ի ուսումնասիրությունները կասկածի տակ են դրել *վիտալիզմի* ճշմարտացիությունը:

ՎՅՈՐԵՇ (Weöres) Շանդոր (1913–1989), հունգար բանաստեղծ: Հեղինակ է «Գովք արարման» (1938), «Լռության աշտարակը» (1956), «Հրե ջրհորը» (1964), «Մայր մտնող Սատուռնը» (1968), «Փսիքեա» (1972), «Տասնմեկ սիմֆոնիա» (1973), «Երգ ամենաթողության» (1980) և բանաստեղծությունների այլ ժող.-ների:

ՎՅՈՒՏՐԻԽ (Vütrich) Կուրտ (ծ. 1938), շվեյցարացի կենսաքիմիկոս: ՄՄՌ-ի մեթոդը կիրառել է լուծույթում կենսբ. մակրոմոլ-ի եռաչափ կառուցվածքը որոշելու (այդ թվում՝ լուծույթում սպիտակուցների կառուցվածք. վերլուծության) համար: Նորելյան մրց. (2002):

ՎՅՈՒՐՑ (Wurtz) Շառլ Ադոլֆ (1817–1884), ֆրանսիացի քիմիկոս, օրգ. քիմ. սինթեզի հիմնադիրներից: Ֆրանսիայի ԳԱ անդամ (1867), նախագահ (1881-ից), Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1873): Սկսակել է (1855) հագեցած ածխաջրածինների ստացման եղանակ (տես *Վյուրցի ռեակցիա*): Բացահայտել է (1872, միաժամանակ Ա.Պ. Բորոդինի հետ) ալդոլային կոնդենսացիան:

ՎՅՈՒՐՑԻ ՌԵԱԿՑԻԱ, համաչափ հագեցած ածխաջրածինների սինթեզի ընդհ. եղանակ՝ մետաղ. նատրիումի և ալկիլհալոգենիդների (սովորաբար՝ քլորիդներ և բրոմիդներ) փոխազդեցությամբ: Հայտնագործել է Ծ. *Վյուրցը* (1855): Ռ. Ֆիտտիգը Վ. ռ. կիրառել է արոմատիկ ածխաջրածինների ստացման համար (Վյուրց–Ֆիտտիգի ռեակցիա):

ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՅՈՒՄ, պարտատիրոջ (կազմ-յուն, քաղաքացի) գույք. կորստի վերականգնումը, որը պատճառվել է պարտապանի ոչ իրավաչափ գործողությամբ կամ անգործությամբ: «Վնաս» ասելով՝ հասկացվում են պարտատիրոջ կատարած ծախսերը, նրա գույքի կորուստը կամ վնասումը, չստացած այն եկամուտները, որոնք նա կստանար, եթե պարտապանը կատարեր պարտավորությունը: Վնասի մեջ մտնում են նաև պարտատիրոջ ապագա ծախսերը (պարտապանի առողջարան. բուժման, խնամքի, ուժեղ սննդի ևն):

ՎՆԱՍՆԵՐ (քաղաքաց. իրավունք), իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, գույքի կորուստը կամ իրական վնասը, ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքաց. շրջանառության սովոր. պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր:

ՎՆԱՍՎԱԾՔ, **տրավմա** (հուն.՝ travma–վերք), մարդու կամ կենդանիների օրգանիզմների վնասում՝ նրանց ամբողջականության և գործառույթի խախտում, որոնք առաջանում են արտաքին (հիմնականում՝ մեխ., ջերմ.) ազդեցության հետևանքով:

ՎՆԱՍՎԱԾՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՕՐԹՈՊԵԴԻԱՅԻ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ Երևանի, հիմնադրվել է 1946-ին՝ Օրթոպեդիայի կլինիկայի (հիմն.՝ 1939՝ Ռ. Յոլյանի անվ. 3-րդ կլինիկ. հիվանդանոցում) հիմքի վրա: 1959-ից ԳՀԻ Ք. Հ. Պետրոսյանի անվ., 2007-ից՝ ներկա անվանումով: Ինստ-ում կատարվող ԳՀ աշխ-ները վերաբերում են ոսկրերի բաց, փակ և ներհոդ. կոտրվածքների, հոդախախտումների բուժման, չսերտաճած կոտրվածքների և կեղծ հոդերի սերտաճման, ոսկրի պակասը վերականգնող շարժ.ընթացների խթանման հարցերին, նաև բնածին ու ձեռքբերովի արատների, ոսկրերի բարորակ նորագոյացությունների, օսթեոմիելիտների բուժման, ախտահարված ծայրանդամի ֆունկցիայի վերականգնման հարցերին: Լայնորեն կիրառվում են ոսկրերի և հոդերի ներքին պրոթեզավորումը, ողնաշարի ձևախախտումների և վնասվածքների վիրահատ. բուժումը: Տնօրեն՝ Վաչագան Այվազյան (1990-ից):

ՎՆԱՍՎԱԾՔԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **տրավմատոլոգիա**, կլինիկ. բժշկագիտ-յան բաժին. ուսումնասիրում է վնասվածքները, նրանց պատճառները, ընթացքը, կանխարգելման և բուժման մեթոդները: *Օրթոպեդիայի* հետ կազմում է միասն. բժշկ. գիտ-յուն:

ՎՇՏՈՒՆԻ Ազատ (Սամիկոնյան Կարապետ Սեթի, 1894–1958), բանաստեղծ, գր-հաս. գործիչ, խմբ.: 1922-ին Եղիշե Չարենցի և Գևորգ Աբովի հետ հրապարակել է *«Երեքի դեկլարացիան»*, 1922–23-ին՝ Հայաստանի պրոլետ. գրողների ասոցիացիայի նախագահը, «Կոմունայի զանգ» (1921, Սիմֆերոպոլ), «Սուրճ» (1922, Երևան), «Դիրքերում» (1924, Թիֆլիս), «Սուրճ և մանգաղ» (1926–27, Դոնի Ռոստով), «Խորհրդային արվեստ» (1932–34, Երևան) պարբ-ների խմբ.: Հեղինակ է «Սրտիս լարերէն» (1915), «Բանաստեղծութիւններ» (1918), «Հուզանք և զանգ» (1923), «Արևելքը հուր է հիմա» (1927), «Ռամ Ռոյ» (1936), «Նոր սերունդը» (1941), «Երբ կայծակը փայլատակում է» (1942) բանաստեղծությունների ժող.-ների:

ՎՈՒՆ ՈՒԻԼՅԱՄՄ (Vaughan Williams) Ռալֆ (1872–1958), անգլիացի կոմպոզիտոր, երգեհոնահար, դիրիժոր: Հեղինակ է «Ուխտագնացի ուղին» (1949) և այլ օպերաների, «Ծեր արքա Քոուլը» (1923) բալետի, սիմֆոնիաների, «Էլլինոր Թյուդորի 5 դիմանկարները» (1935) երգչախմբի և նվագախմբի համար սյուիտի, հոգևոր հիմների, կինոերաժշտության և այլ գործերի: Լիթ Հիլլի երաժշտ. փառատոնի հիմնադիր-գլխ. դիրիժոր (1905–53), Լոնդոնի Բախյան երգչախմբի գեղ. ղեկ. (1920–28):

ՎՈՒԲԱՆ (Vauban) Սեբաստիան Լե Պրետր դե (1633–1707), ֆրանսիացի ռազմ. ճարտարագետ, մարշալ (1703), մարկիզ: Կառուցել և վերակառուցել է ավելի քան 300 ամրոց: Աշխ-ները վերաբերում են ռազմաճարտարագիտ. գործին:

ՎՈՐԼԱ (Rutilus caspicus), *ծածանաձկների* ընտանիքի ձուկ: Կարմրակնի կիսագաղթող տեսակ: Երկ.՝ մոտ 50 *սմ* (մոտ 2 *կգ* զանգվածի դեպքում): Ապրում է Կասպից ծովում, ձուղպադրում՝ գետերում: Արդյունագործ. ձուկ է:

ՎՈՍԳԵՍՆԵՐ (Vosges), լ-ներ Ֆրանսիայի հս-արլ-ում: Երկ.՝ 160 *կմ*, բարձր.՝ մինչև 1423 *մ* (Բալլոն դե Գերվիլլեր): Տարածված են հաճարենու, խեժափիճու, եղևնու անտառները, հովիտները երկրագործ. շրջաններ են: Կա հատուկ պահպանվող տարածք:

ՎՈՍԳԵՍՆԵՐ, դեպարտամենտ Ֆրանսիայում: Տարածքը՝ 5874 *կմ*^{2}, բն.՝ 392,8 հզ. (2010); Վարչ. կենտրոնը՝ Էպինալ:

ՎՈՒԴԵՎԻԼ (ֆրանս.՝ vaudeville, < vau de Vire – Վիր գետի հովիտը Նորմանդիայում, որտեղ XV դ-ում տարածվել է ժող. վոդևիլ երգի տեսակը), կատակերգության տեսակ՝ երգերով և պարերով: Ծագել է XVIII դ-ում Ֆրանսիայում (Է. Սկրիբ, Է. Լաբիշ): Հայկ. Վ. ձևավորվել է 1860-ական

թթ–ին (Մ. Պատկանյան, Մ. Տեր–Գրիգորյան, Հ. Գուրգենբեկյան, Ն. Փուղինյան և ուր.) և դարձել արևելահայ թատրոնի նախասունդուկյան. դրամատուրգիան: Վ–ներ են գրել Գ. Սունդուկյանը («Գիշերվան սարբը խեր է», «Եվայլև կամ Նոր Դիոգինես» ևն), Հ. Պարոնյանը («Ատամնաբույժ արևելյան», «Շողոքորթը» ևն):

ՎՈԴՈՊՅԱՆՈՎ Միխայիլ Վասիլևիչ (1899–1980), ռուս օդաչու, գեն–մայոր (1943): ԽՄ հերոս (1934): ՀՄՊ–ի ժամանակ՝ ավիացիոն դիվիզիայի հրամ.:

ՎՈԵՅԿՈՎ Ալեքսանդր Իվանովիչ (1842–1916), ռուս աշխարհագետ և կլիմայագետ, Ռուսաստանում կլիմայագիտ–յան հիմնադիրը: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1910):

ՎՈԶՆԵՄԵՆՍԿԻ Անդրեյ Անդրեևիչ (1933–2010), ռուս բանաստեղծ: Վ–ու պոեզիան առանձնանում է այժմեականության խոր զգացողությամբ, պատկերավոր խոսքի, համեմատությունների և փոխաբերությունների արտասովոր և ոիթմ. համակարգով: Հեղինակ է «Եռանկյուն տանձ» (1962), «Հակաաշխարհներ» (1964), «Վիտրաժների վարպետ» (1976, «Ինքնափնտրումի աքսիոմ» (1990), «Իմ Ռուսաստան» (2001) և բանաստեղծությունների այլ ժող–ների, «Վարպետներ» (1959), «Լոնժյումո» (1963), «Օզա» (1964), «Ավոս» (1972, ռոք–օպերա՝ «Յունոնա և Ավոս», բեմ.՝ 1981) և այլ պոեմների, նաև հուշագրությունների, հրապարակախոս. երկերի: ԽՍՀՄ Պետ. (1978), ՌԴ Կառ–յան (2010, հետմահու) մրց–ներ:

ՎՈԶՆԵՄԵՆՍԿԻ Իվան Նիկոլաևիչ (1887–1946), մեքենաշինության բնագավառի ռուս գիտնական: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1939): Աշխ–ները վերաբերում են հիդրոմեքենաշինությանը (ղեկավարել է հզոր տուրբինների և պոմպերի նախագծումն ու կառուցումը) և ինքնաշխատ կարգավորմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1947, հետմահու):

ՎՈԶՆԵՄԵՆՍԿԻ Նիկոլայ Ալեքսեևիչ (1903–1950), խորհրդ. պետ. և կուս. գործիչ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1943): 1938–41 և 1942–49–ին՝ ԽՍՀՄ պետպլանի նախագահ: 1946–49–ին՝ ԽՍՀՄ ՆԽ նախագահ: 1939–49–ին՝ ԽՄԿԿ ԿԿ անդամ, միաժամանակ, 1947–49–ին՝ Քաղբյուրոյի անդամ: Ռնաղատվել է (տես «*Լենինգրադյան գործ*»), հետմահու՝ արդարացվել:

ՎՈՐՆՈՎԱ–ՇԻԿԱՆԵՅԱՆ Լյուբով Պավլովնա (1909–1990), բալետի ռուս. արտիստուհի: Դմիտրի *Շիկանյանի* կինը: ՀԽՍՀ ժող. արտիստ (1945): 1938–55–ին՝ ԵՕԲԹ–ի (1955–63–ին՝ մանկավարժ–փորձավար) մենապարուհի (Կարինե՝ Ա. Խաչատրյանի «Երջանկություն», առաջին դերապարուհին, Օդետա–Օդիլիա՝ Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճը», ևն):

ՎՈԼԳԱ (հնում՝ Ռա, միջնադարում՝ Իտիլ), ՌԴ խոշորագույն գետը: Երկ.՝ 3530 *կմ*, ավազանը՝ 1360 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 7500 *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Վալդայան բարձր–յունից և թափվում է Կասպից ծովը: Խոշոր վտակները՝ Կամա, Օկա: Գործում է ջրէկների կասկադ: Նավարկելի է 3200 *կմ*: Ջրանցքներով կապված է Բալթիկ, Սպիտակ, Ազովի և Սև ծովերի հետ: Վ–ի ափին են Կազան, Յարոսլավլ, Նիժնի Նովգորոդ, Տվեր, Վոլգոգրադ, Սամարա ք–ները:

ՎՈԼԳՈԳՐԱԴ (մինչև 1925–ը՝ Ցարիցին, մինչև 1961–ը՝ Ստալինգրադ), ք. ՌԴ–ում, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 981,9 հզ. (2010): Երկթղ. հանգույց է, Վոլգա–Դոն ջրանցքի սկզբնակետը: Առաջին անգամ հիշատակվում է 1589–ին՝ որպես ք–ամրոց: Գրեթե ամբողջությամբ ավերվել է ԵՀՊ–ի ժամանակ:

ՎՈԼԳՈԳՐԱԴԻ ՄԱՐԶ, վտմ ՌԴ Հվ. դաշն. օկրուգում: Տարածքը՝ 113 հզ. *կմ*^{2}, բն.՝ 2,6 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ *Վոլգոգրադ*: Ունի 33 շրջան, 19 քաղաք, 23 քտա: Կազմավորվել է 1936–ին: Գլխ. գետերը՝ Վոլգա, Դոն:

ՎՈԼԵՅԲՈԼ (անգլ.՝ volleyball), գնդակով թիմ. մարզախաղ 9x18 *մ* չափերով խաղահրապարակում, որը ցանցով (2,43 *մ* բարձր–յամբ՝ տղամարդկանց, և 2,24 *մ* բարձր–յամբ՝ կանանց մրցումների համար) բաժանված է 2 մասի: Խաղացողները ձեռքով հարվածելով աշխատում են գնդակը գետին գցել հակառակորդի կիսադաշտում: Առաջացել է ԱՄՆ–ում (1895): Միջազգ. ֆեդերացիան (FIVB, հիմն.՝ 1947) ներառում է 210 երկիր (2015), ՀՀ վոլեյբոլի ֆեդերացիան (կազմավորվել է 1991–ին) անդամ է 1991–ից: Օլիմպ. խաղերի ծրագրում է 1964–ից, աշխարհի առաջնությունը՝ 1964–ից, Եվրոպայինը՝ 1948–ից:

ՎՈԼԻՆԻ ՄԱՐԶ, վտմ Ուկրաինայում: Տարածքը՝ 20,2 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1 մլն (2015): Վարչ. կենտրոնը՝ *Լուցկ*:

ՎՈԼԽՈՎ, գետ ՌԴ Եվրոպ. մասի հս–արմ.–ում: Երկ.՝ 224 *կմ*, ավազանը՝ 80,2 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 593 *մ*^{3}/*վ*: Թափվում է *Լադոգա լիճը*: Կա նավարկություն: Ափին են Նովգորոդ, Կիրիշի, Վոլխով ք–ները:

ՎՈԼԿ Իգոր Պետրովիչ (1937–2017), ռուս տիեզերագնաց օդաչու: ԽՍՀՄ վաստ. փորձարկող օդաչու (1984), ԽՄ հերոս (1984): Փորձարկել է Իլ, Յակ, ՄիԳ, Տու, Սու ինքնաթիռները, «Բուրան» ուղեծրանավի ինքնաթիռ–նմանակները: Թռել է «Սոյուզ Տ–12» տիեզերանավով և «Սալյուտ–7» տիեզերակայանով (1984):

ՎՈԼԿՈՆՍԿԻ Անդրեյ Միխայլովիչ (1933–2008), ռուս. կոմպոզիտոր, կլավեսինահար, երգեհոնահար: 1965–ին հիմնադրել է ինագույն երաժշտության «Մադրիգալ» անսամբլը: Օգտագործել է 12–տոն. տեխնիկա, ստեղծել է էլեկտրոն. երաժշտություն: Հեղինակ է «Հայելիների սյուիտ» (1960), «Շչազայի բողոքները» (1965) կամեր. կանտատների, գործիք. և այլ երկերի:

ՎՈԼԿՈՆՍԿԻ Պյոտր Միխայլովիչ (1776–1852), ռուս գեն–ֆլդմ. (1850), պայծառափայլ իշխան (1834): Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. անդամ (1813): 1812–ի Հայրեն. պատերազմի մասնակից: 1826–ից՝ կայսեր. պալատի և տիրույթների նախարար:

ՎՈԼԿՈՎ Ալեքսանդր Նիկիտովիչ (1929–2005), ռուս պետ. և ռազմ. գործիչ, ավիացիայի մարշալ (1989): 1986–ից՝ ՌՕՈՒ գլխ. հրամ–ի տեղակալ, 1987–90–ին՝ ԽՍՀՄ քաղաքաց. ավիացիայի նախարար:

ՎՈԼԿՈՎ Բորիս Իվանովիչ (1900–1970), ռուս. բեմականարիչ: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1965): Թատեր. ձևավորումներում զուգորդել է գեղանկարչ. և ծավալ. դեկորացիաներ, ներմուծել քնար. բնանկարի տարրեր (Վ. Շեքսպիրի «Մակբեթ», 1955, ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1949, 1951, 1952):

ՎՈԼԿՈՎ Լև Իվանովիչ (1930–2007), սարքաշինության բնագավառի ռուս գիտնական: Գեն–լեյտ. (1984): ՌԳԱ թղթ. անդամ (1991): Աշխ–ները վերաբերում են թռչող տիեզ. և հրթիռ. սարքերի համալիր մաթ. մոդելավորմանը և ոչ գծային դինամիկ. համակարգերի գնահատմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1990):

ՎՈԼԿՈՎ Վլադիմիր Նիկոլաևիչ (1935–1971), ռուս տիեզերագնաց օդաչու (1969): ԽՄ հերոս (1969, 1971, հետմահու): Թռել է «Սոյուզ–7»–ով (1969–ի հոկտ.), «Սոյուզ–11»–ով և «Սալյուտ» տիեզերակայանով (1971–ի հունիս): Զոհվել է Երկիր վերադառնալիս:

ՎՈԼԿՈՎ Օլեգ Վասիլևիչ (1900–1996), ռուս գրող: Հեղինակ է ստալինյան բռնաճնշումների մասին «Խորասուզում խավարի մեջ» (1987) վավերագր. երկի, բնապահպան. թեմաներով վիպակների, պատմվածքների, հրապարակախոս. հոդվածների, «Նրա մեջ յուրաքանչյուր քարն ապրում է: Մոսկվայի փողոցների պատմությունից» (1985) պատմվածքների ժող–ի: Կատարել է թարգմ–յուններ: ՌԴ Պետ. մրց. (1991):

ՎՈԼՅՈՒՆՏԱՐԻԶՄ, *կամապաշտություն* (լատ.՝ voluntas – կամք), փիլ–յան ուղղություն, որը կամքը դիտարկում է որպես կեցության բարձրագույն սկզբունք: Հասկացությունը ներմուծել է Ֆ. *Թյունիսը* (1883): Վ. բնորոշ է Օգոստինոս Երանելու, Հովհան Դունս Սկոտի և ուր. փիլ–յանը: Որպես ինքնուրույն ուղղություն՝ ձևավորվել է Ա. Շոպենհաուերի փիլ–յան համակարգում:

ՎՈԼՈԳԴԱ, ք. ՌԴ–ում, համանուն մարզի վարչ. կենտրոնը, նվինգստ Վոլոգդա գետի ափին: Բն.՝ 286,2 հզ. (2009): Հիմնադրվել է 1147–ին:

ՎՈԼՈԳԴԱՅԻ ՄԱՐԶ, վտմ ՌԴ Հս–արմ. դաշն. օկրուգում: Տարածքը՝ 145 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,2 մլն (2009): Վարչ. կենտրոնը՝ *Վոլոգդա*: Ունի 26 շրջան, 15 քաղաք, 9 քտա: Կազմավորվել է 1937–ին:

ՎՈԼՈԳԴԻՆ Վալերի Պետրովիչ (1881–1953), ԲՀ տեխնիկայի բնագավառի ռուս գիտնական: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1939): Ստեղծել է ԲՀ մեք. գեներատորներ, որոնց միջոցով 1–ին անգամ իրականացրել է Մոսկվա–Նյու Յորք ռադիոկապը (1925), բարձրավոլտ սնդիկ. ուղղիչներ: Վ–ի ղեկավարությամբ մշակվել են ԲՀ զոդման, կոփման մեթոդներ:
ԽՍՀՄ Պետ. մրց. (1943, 1952):

ՎՈԼՈՎԻՆ (Լիֆշից) Ալեքսանդր Միխայլովիչ (1919–2001), հրեա ռուսագիր գրող: Հեղինակ է առօրյա կյանքի մասին «Ֆաբրիկայի աղջնակը» (1956), «Հինգ երեկո» (1959), «Ավազ քույրը» (1961) և այլ պիեսների, «Զանգում են, բացեք դուռը» (1965), «Աշնանային մարաթոն» (1979) և այլ կինոնկարների սցենարների: ՌԽՖՍՀ Պետ. մրց. (1981):

ՎՈԼՈՎԻՆ Անտոն Նիկոլաևիչ (1897–1966), ռուս. մետաղագետ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1960): Աշխ–ները վերաբերում են հալույթներում քիմ. հավասարակշռության տեսությանը: ԽՍՀՄ Պետ. (1949, 1953), Լենինյան (1965) մրց–ներ:

ՎՈԼՈՎԻՆ Վիկտոր Վացլավովիչ (1921–1999), ռուս. պատմաբան, տնտեսագետ և տնտ. աշխարհագետ: ՌԳԱ թղթ. անդամ (1984): ԽՄ հերոս (1945): ՌՖԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): Աշխ–ները վերաբերում են Լատ. Ամերիկայի պատմությանը, սոցիալ–տնտ. և քաղ. խնդիրներին, համաշխ. տնտ–յան և միջազգ. հարաբերությունների հարցերին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1987):

«ՎՈԼՎՈ» (Volvo), շվեդ. կոնցեռն: Հիմնադրվել է 1927–ին: Արտադրում է մարդատար ու բեռնատար ավտոմոբիլներ, ավտոբուսներ, շարժիչներ, տարբեր սարքավորումներ: 1999–ին մարդատար ավտոմոբիլների արտադր–յունը վաճառել է «Ֆորդ» կոնցեռնին:

ՎՈԼՎՈՔՍ, կանաչ ջրիմուռների ցեղ, գաղութ. շարժուն օրգանիզմներ են (3 *մմ* տրամագծով գնդաձև գաղութներ են, պարունակում են մի քանիսից մինչև տասնյակ հզ. բջիջ): Հայտնի է 20 տեսակ: Ապրում են հոսող քաղցրահամ ջրերում՝ նրանց տալով կանաչ գույն:

ՎՈԼՏ, էլ. լարման, պոտենցիալի, պոտենցիալների տարբերության, էլշուի միավորը ՄՄՀ-ում: Կոչվել է Ա. *Վոլտայի* անունով: Նշանակվում է *Վ* (V): 1 *Վ* = 10^8/*c* · CGSE միավոր = 1/300 · CGSE միավոր = 10^8 CGSM (*c*-ն՝ լույսի արագությունը վակուումում):

ՎՈԼՏԱ, (Volta) Ալեսանդրո (1745–1827), իտալացի ֆիզիկոս և ֆիզիոլոգ, էլեկտրականության մասին ուսմունքի հիմնադիրներից: Ստեղծել է հոսանքի առաջին քիմ. աղբյուրը (1800, վոլտյան սյուն): Հայտնաբերել է (1795) պոտենցիալի հպումային տարբերությունը: Վ.-ի անունով կոչվել է *Վոլտ* չափման միավորը:

ՎՈԼՏԱ, գետ Արմ. Աֆրիկայում, կազմավորվում է Սպիտակ և Սև Վ.-ների միախառնումից: Երկ.՝ 1600 *կմ*, ավազանը՝ 394 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1288 *մ*^{3}/*վ*: Թափվում է Գվինեական ծոցը: Նավարկելի է շուրջ 400 *կմ*: Գործում է ջրէկ:

ՎՈԼՏԱ ՌԵԴՈՆԴԱ, (Volta Redonda), ք. Բրազիլիայի հվ.-արլ.-ում: Բն.՝ 257,6 հզ. (2010):

ՎՈԼՏ-ԱՄՊԵՐ, փոփոխ. հոսանքի շղթայի լրիվ հզորության միավորը ՄՄՀ-ում, 1 *Ա* հոսանքի ուժի և 1 *Վ* լարվածության գործող արժեքների դեպքում էլ. շղթայի հզորության միավորը: Նշանակվում է *Վ* · *Ա* (V · A): Դիտարկվում են նաև ակտիվ հզորություն՝ արտահայտված *Վտ*-երով, և ռեակտիվ հզորություն՝ արտահայտված *Վառ*-երով:

ՎՈԼՏԱՄՊԵՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ, քանակ. և որակ. վերլուծության էլեկտրաքիմ. մեթոդների համախումբ, որոնք հիմնված են հոսանքի ուժի և բևեռացման լարվածության միջև եղած կախվածության որոշման վրա՝ լուծույթի էլեկտրոլիզի կամ ուսումնասիրվող նյութի հալման դեպքում:

ՎՈԼՏԱՅԻ ՏԱՐՐ, գալվան. տարր, որի դրական էլեկտրոդը պղնձե թիթեղ է, բացասականը՝ ցինկե, էլեկտրոլիտը՝ նատրիումի քլորիդի կամ ծծմբական թթվի լուծույթ. էլշուն՝ 1,0 *Վ*: Առաջարկել է Ա. *Վոլտան*:

ՎՈԼՏԱՉԱՓ, էլ. շղթաներում էլշուի և լարումների (*մկՎ*-երով, *Վ*-երով, *կՎ*-երով) չափման սարք: Շղթան բեռնվածքին միացնում են զուգահեռ:

ՎՈԼՏԵՐ (Voltaire, Մարի Ֆրանսուա Արուե, Arouet, 1694–1778), ֆրանսիացի գրող, փիլ.-լուսավորիչ: Ֆրանսիայի ակադ-ի (1746), Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. (1746) անդամ: Փիլ. հայացքներով Ջ. Լոկի, Ի. Նյուտոնի հետևորդը («Փիլիսոփայական նամակներ», 1733): «Լյուդովիկոս XIV-ի դարաշրջանը» (հրտ.՝ 1751), «Քննախոսություն...» (հրտ.՝ 1756), «Ռուսական կայսրության պատմությունը...» (1759–63) պատմագիտ. աշխ-ներն ուղենիշ են եղել եվրոպ. պատմագրության համար: Վ. գեղագիտ-յան մեջ և դրամատուրգիայում շարունակել է XVII դ-ի կլասիցիզմի ավանդույթները («Էդիպոս», 1718, «Բրուտոս», 1731, «Զաիր», 1732, «Կեսարի մահը», 1735, հայ.՝ 1910, «Մոլեռանդություն կամ Մուհամմեդ Մարգարեն», 1742, ևն): Մինչև 1760-ը համագործակցել է Դ. Դիդրոյի «Հանրագիտարանի» հետ: 1760-ական թթ-ին սրվել է Վ.-ի պայքարը կաթոլիկ եկեղեցու դեմ: Եղել է Եվրոպայի հաս. առաջադեմ կարծիքի առավել ցայտուն արտահայտիչը, մեծապես ազդել է լուսավոր. մտքի զարգացման վրա: Հեղինակ է նաև ավատատիր. անարխիան դատապարտող «Հեներիականը» (1728, հայ. հատվածաբար թարգմանել է Ե. Դուրյանը), «Օռլեանի կույսը» (1735, հրտ.՝ 1755, Ժաննա դ'Արկի մասին) պոեմների, «Փիլիսոփայական բառարան»-ի (1764–69), «Զադիգ կամ Նախասահմանություն» (1748, հայ.՝ 1867), «Միկրոմեգաս» (1752), «Կանդիդ կամ Լավատեսություն» (1759), «Պարզամիտը» (1767), «Բաբելոնյան իշխանուհին» (1768) փիլ. պատմվածքների, նաև հրապարակախոս. նյութերի, ընդարձակ նամակագրության:

ՎՈԼՏԵՐ (Եկենյան) Պետրիս (1900–1972), դերասանուհի: Օննիկ *Վոլտերի* կինը: 1918-ից՝ *Ֆեդելյան* քույրերի խմբի, 1923-ից՝ «Եգիպտահայ դրամատիկ խմբի» դերասանուհի (Մարգարիտ՝ Շիրվանզադեի «Պատվի համար», Շուշանիկ՝ Ս. Բյուրատի «Վարդանանք», Ռոզալիա՝ Պ. Զակոմետտիի «Ոճրագործի ընտանիքը», Դեզդեմոնա՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», ևն):

ՎՈԼՏԵՐ (Գալֆյան) Օննիկ (1891–1952), դերասան, ռեժ., թատեր. գործիչ: Պետրիս *Վոլտերի* ամուսինը: 1907–14-ին Եգիպտոսում, Կ. Պոլսում մասնակցել է տարբեր թատերախմբերի ներկայացումների, 1914-ին՝ Կահիրեի «Արծիվ» թատերախմբի դերասան, ապա՝ ռեժ., 1923-ին հիմնադրել է «Եգիպտահայ դրամատիկ խումբը»: Բեմադրել է Վ. Հյուգոյի «Թշվառները», Պ. Զակոմետտիի «Ոճրագործի ընտանիքը», Վ. Շեքսպիրի «Օթելլո» և այլ գործեր (խաղացել է գլխ. դերերը):

ՎՈԼՖ (Wolf) Կասպար Ֆրիդրիխ (1734–1794), ռուս. սաղմնաբանության հիմնադիրներից (ծագումով՝ գերմանացի): Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1767): 1766-ից՝ Ռուսաստանում: «Կյանքի ծագման տեսությունը» դաս. աշխ-յունը մեծ նշանակություն է ունեցել նախաձևավորման (պրեֆորմիզմ) և տեսակների անփոփոխության պատկերացումների դեմ պայքարում, հիմնավորել է սաղմի օրգանների և համակարգերի աստիճանաբար և հաջորդաբար ձևավորման մասին ուսմունքը (էպիգենեզ): Օրգանիզմների անհատ. զարգացման ուսմունքի (*օնտոգենեզ*) հիմքն է դրել:

ՎՈԼՖ Ռուդոլֆ (1816–1893), շվեյցարացի աստղագետ: Աշխ-ները վերաբերում են արևաբծերի ուսումնասիրություններին և աստղագիտ-յան պատմությանը: Արեգակն. ակտիվության համար՝ ներմուծել է *Վոլֆի թիվը* (1848):

ՎՈԼՖ Քրիստա (1929–2011), գերմանացի գրող: Հեղինակ է ԳԴՀ և ԳԴԵՀ դիմակայության թեմայով «Պատռված երկինք» (1963), «Մտորումներ Քրիստ Թ-ի մասին» (1968) վեպերի, Գ. Ֆոն Քլեյստի մասին «Տեղ չկա: Ոչ մի տեղ» (1979) վիպակի, «Վթար» (1987) վեպի, «Կասանդրա» (1983) և «Մեդեա» (1996) վեպ-առակների, նաև պատմվածքների, էսսեների:

ՎՈԼՖ Ֆրիդրիխ (1888–1953), հրեա դրամատուրգ, գրող, քաղ. գործիչ: 1933–45-ին՝ վտարանդի, 1939–41-ին՝ համակենտրոնացման ճամբարում: Գերմ. հեղ-պրոլետ. թատրոնի հիմնադիր: Հեղինակ է էքսպրեսիոնիստ. «Ցիանակալիում» (1929), «Նավաստիները Քաթարոյից» (1930), հակաֆաշիստ. թեմայով «Պրոֆեսոր Մամլոքը» (1934), «Տրոյական ձի» (1937) պիեսների, «Բուրգոմիստր Աննան» (1950) կատակերգության, «Թոմաս Մյունցեր» (1953) դրամայի, «Երկուսը սահմանի վրա» (1938), «Թռչող ափսեներ» (1952) վեպերի, նաև վիպակների ևն: Հայ. լույս է տեսել Վ.-ի «Գյուղացու ողբերգությունը» (1936):

ԳԴԵՀ-ի ազգ. մրց-ներ (1949, 1950):

ՎՈԼՖԻ ԹԻՎ, (նշանակվում է W), արեգակն. ակտիվության բնութագիր (ինդեքս). W = f + 10 g, որտեղ f-ն Արեգակի տեսանելի կիսագնդի վրա բծերի ընդհ. թիվն է, g-ն՝ այդ բծերը միավորող խմբերի թիվը: Ներմուծել է շվեյցարացի աստղագետ Ռ. *Վոլֆը* (1848):

ՎՈԼՖ-ՌԱՅԵԻ ԱՍՏՂԵՐ, երիտասարդ ջերմ աստղեր, որոնց սպեկտրներում դիտվում են լայն պայծառ գծեր: Վ.-Ռ. ա. ունեն մեծ զանգված (5–50 Արեգակի զանգված), բարձր լուսատվություն (Արեգակի լուսատվությունից միջինը՝ 4000 անգամ մեծ) և ձգված մթն.: Վ.-Ռ. ա-ի էֆեկտիվ ջերմաստիճանը մոտ 50000 K է:

ՎՈԼՖՍԲՈՒՐԳ (Wolfsburg), ք. Գերմանիայի Ստորին Սաքսոնիա երկրամասում: Բն.՝ 121 հզ. (2010): Ավտոմոբիլաշին. արդ-յան («Volkswagen» ֆիրմայի գործարանը) կենտրոն է:

ՎՈԼՖՐԱՄ (Wolframium), W, տարրերի պարբեր. համակարգի VI խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 74, ա. զ.՝ 183,85: Անվանումը՝ գերմ. Wolf – գայլ և Rahm սերուցք (գայլ. փրփուր): Բաց մոխրագույն, ամենաղժվարահալ մետաղներից է, խտ.՝ 19,3 *գ/սմ*^{3}, $t_{հալ.}$՝ 3380°C: Սովոր. ջերմաստիճանում օդում կայուն է: Գլխ. միներալներն են վոլֆրամիտը և շելիտը: Կրակադիմացկուն գերպինդ պողպատների (գործիք., արագ կտրվող) և համաձուլվածքների (պոբեդիտ, ստելիտ ևն) բաղադրիչ է, մաքուր Վ. օգտագործվում է էլեկտրատեխնիկայում (շիկացման լամպերի թելեր) և ռադիոտեխնիկայում (էլեկտրոն. սարքերի կատողներ և անողներ):

ՎՈԼՖՐԱՄԱՏՆԵՐ, վոլֆրամաթթուների (H_2WO_4) աղերը: Na_2WO_4-ն օգտագործվում է գունանյութերի արտադր-յան մեջ: $CaWO_4$, $BaWO_4$ և $MgWO_4$-ը լյումինոֆորներ են: Հազվագյուտ տարրերի Վ. լազեր. նյութերի բաղադրիչներ են: Բնական Վ.-ի գլխ. միներալներն են վոլֆրամիտը և շեելիտը:

ՎՈԼՖՐԱՄԻ ԿԱՐԲԻԴ, WC, գորշ բյուրեղ. նյութ է, քայքայվում է 2720°C-ում: Մետաղախեցեգործ. կարծր համաձուլվածքների հիմք է, օգտագործվում է պողպատների լեգիրման համար, հորատիչ թագագլխիկների տարրերի պատրաստման ժամանակ:

ՎՈԼՖՐԱՄԻ ՀԱՄԱՁՈՒԼՎԱԾՔՆԵՐ, վոլֆրամի հիմքով համաձուլվածքներ: Որպես լեգիրող հավելանյութեր օգտագործում են մետաղներ (օր.՝ Mo, Re, Cu, Ni, Ag), օքսիդներ (ThO_2, Y_2O_3, Lo_2O_3), կարբիդներ (TaC, ZrC, HSC) ևն: Բնութագրվում են բարձր դժվարահալությամբ և ջերմակայունությամբ: Արտադրվում են փոշեմետալուրգիայի մեթոդներով բաղադրիչների համաձուլվածքով աղեղ. և էլեկտրոնաճառագայթ. վառարաններում:

ՎՈԼՖՐԱՄԻ ՕՔՍԻԴ, WO_3, կիտրոնադեղնավուն բյուրեղ. նյութ է: $T_{հալ.}$՝ 1470°C: Ջրում չի լուծվում: *Վոլֆրաամի, վոլֆրամատների* արտադր-յան միջանկյալ նյութ է, դեղին գունանյութ՝ խեցեղենի և ապակու համար, ածխաջրածինների ճեղքատրոհման (կրեկինգ) և հիդրման կատալիզորդ:

ՎՈԿԱՆՍՈՆ (Vaucanson) Ժակ դե (1709–1782), ֆրանսիացի մեխանիկոս, գյուտարար: Կառուցել է թավշագործվածքի մեխ. հաստոց, ստեղծել ժամացույցի մեխանիզմով ավտոմատներ (այդ թվում՝ «Ճախրող բադիկը» և «Նվագող ֆլեյտահարը» հայտնի խաղալիքները):

ՎՈԿԼՅՈՒԶ, դեպարտամենտ Ֆրանսիայում: Տարածքը՝ 3567 *կմ*^{2}, բն.՝ 555 հզ. (2010): Վարչ. կենտրոնը՝ *Ավինյոն*:

ՎՈՄԲԱՏՆԵՐ, երկկտրիչավոր պարկավորների կարգի կաթնասունների ընտանիք: Մարմնի երկ.՝ մինչև 3 *մ*: Հայտնի է 3 տեսակ՝ Ավստրալիայում և Թասմանիայում: 1 տեսակը գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՎՈՅԱՉԵԿ Վլադիմիր Իգնատևիչ (1876–1971), ռուս. քիթկոկորդականջաբան: Բժշկ. ծառայության գնդ.-լեյտ. (1943): Գիտ. դպրոցի հիմնադիր: ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1944): ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1933): Սոց. աշխ. հերոս. (1961): Աշխ-ները վերաբերում են ներքին ականջի ֆիզիոլոգիային, ախտաբանությանը, հիվանդությունների վիրաբուժ. բուժմանը, ավիացիոն բժշկագիտ-յանը:

«ՎՈՅԱՋԵՐ» (անգլ.՝ Voyager – բառացի՝ ճանապարհորդ), Արեգակն. համակարգի հեռավոր մոլորակների ուսումնասիրման ամերիկ. տիեզ. սարքերի սերիա: Զանգվածը՝ 733 *կգ*: Արձակվել են «Վ.-1», «Վ.-2» (1977): Մոլորակների մոտով անցնելիս կատարել են հետազոտություններ. «Վ.-1»-ը՝ Յուպիտերի, Սատուռնի (1979–1980), «Վ.-2»-ը՝ Յուպիտերի, Սատուռնի, Ուրանի, Նեպտունի (1979–89):

ՎՈՅԵՎՈԴՈՒԹՅՈՒՆ, վոմ Լեհաստանում:

ՎՈՅՆԻՉ (Voynich) Էթել Լիլիան (1864–1960), անգլիացի գրող: Ջ. *Բուլի* դուստրը: 1920-ից՝ ԱՄՆ-ում: Հեղինակ է «Բոռ» (1897, հայ.՝ 1906), «Ընդհատված մտերմություն» (1910) և այլ վեպերի, որտեղ պատկերել է 1830–40-ական թթ-ի իտալ. ժողղ-ի ազատագր. պայքարը, «Բաբելոն» (1948) երաժշտ. օրատորիայի՝ ռուս. ինքնակալության տապալման մասին:

Վ. ծանոթ է եղել հայ ժողղ-ի պատմությանը, 1895-ին 2 նամակ է գրել Հենրի *Լինչին*. մեկում նկարագրել է հայկ. 2 վանք, 2-րդում ներկայացրել է անգլ. մի քարտարան՝ հայերի ու Հայաստանի հետ առնչվող գրքերով:

ՎՈՅՆՈ-ՅԱՄԵՆԵՑԿԻ Վալերի Ֆելիքսովիչ (վանականության մեջ՝ Լուկա, 1877–1961), ռուս. վիրաբույժ: ՌՈՒԽ գործիչ: Հեղինակ է «Թարախային վարակների վիրաբուժության ակնարկներ» (1934, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1944) դաս. աշխ-յան ևն:

ՌՈՒԽ-ն Վ.-Յ-ուն սրբադասել է (1996):

ՎՈՅՆՈՎԻՉ Վլադիմիր Նիկոլաևիչ (ծ. 1932), ռուս գրող: 1980–92-ին՝ վտարանդի: Հեղինակ է «Ջինվոր Իվան Չոնկինի կյանքը և անսովոր արկածները» (1975), «Գահի հավակնորդը» (1979), «Հուշագրային քարոզչություն» (2000) վեպերի, «Իվանականություն» (1976) երգիծավավերագր. վիպակի, «Մոսկվա–2042» (1987), հակաուտոպ. վիպակ-սատիրայի, «Մտահղացում» (1995) ինքնակենսագր. երկի, նաև բանաստեղծությունների, պիեսների, հրապարակախոս. նյութերի: ՌԴ Պետ. մրց. (2000):

ՎՈՅՑԵԽՈՎՍԿԻ Բոգդան Վյաչեսլավովիչ (1922–1999), ճայթյուն. շարժ ընթացների մեխանիկայի, հիդրոհմպուլս. տեխնիկայի, ռոբոտատեխնիկայի բնագավառի ռուս. գիտնական: ՌԴԱ ակադ. (1991): Աշխ-ները վերաբերում են գազերում սպինային ճայթյունի կառուցվածքի ապածածկագրմանը և լայնական ճայթյուն. ալիքների հայտնաբերմանը, կումուլյատիվ արկերից տանկի գրահի դինամիկ. պաշտպ-յան մեթոդների մշակմանը, բարձր էներգ. հարված. մեքենաների սերիական մշակմանը: Լենինյան մրց. (1965):

ՎՈՆԵԳՈՒՏ (Vonnegut) Կուրտ (1922–2007), ամերիկացի գրող (ծագումով՝ գերմանացի): Հեղինակ է «Մեխանիկական դաշնամուրը» (1952), «Օրորոց կատվի համար» (1963), «Համար 5 սպանդանոցը» (1969), «Բալագան» (1976), «Բանտի թռչնակը» (1979), «Գալապագոս» (1985), «Կապտամորուսը» (1987, հայ.՝ 2005) վեպերի, «Ծաղկազարդի կիրակին» (1981), «Անհայրենիք մարդը» (2005) էսսեների ժող-ների:

ՎՈՆՈՆ (ծ. թ. անհտ–19), Հայոց թագավոր՝ մոտ 12–16-ին: Պարթևաց արքա Հրահատ IV-ի որդին: Պատանի հասակում պատանդ է եղել Հռոմում: Գահակալ. պայքարում պարտվելով Արտավան III-ին՝ ապաստանել է Մեծ Հայքում և Հռոմի միջամտությամբ տիրել Հայոց թափուր գահին: Հայ-պարթ. ուժերի դեմ պատերազմից խուսափելու համար Հռոմի կայսր Տիբերիոսը գահընկեց է արել Վ.-ին:

ՎՈՆՋՈՒ, ք. Կորեայի Հանրապետությունում: Բն.՝ 310,8 հզ. (2010):

ՎՈՆՍԱՆ, ք-նվինգստ Կորեայի ԺԴՀ-ում՝ Ճապոն. ծովի ափին, Կանվոնդո պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 328, 5 հզ. (2008):

ՎՈՆՍՈՎՍԿԻ Սերգեյ Վասիլևիչ (1910–1998), ռուս. ֆիզիկոս-տեսաբան: ՌԴԱ ակադ. (1966): Սոց. աշխ. հերոս (1969): Մագնիս. տեսության դպրոցի հիմնադիրը: Աշխ-ները վերաբերում են պինդ մարմնի տեսությանը, մագնիս. երևույթներին, մետաղների և համաձուլվածքների տեսությանը, կիսահաղորդիչներին, գերհաղորդականությանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1975, 1982):

«ՎՈՍԽՈԴ», շուրջերկրյա ուղեծրով թռիչքների համար նախատեսված ռուս. բազմատեղ տիեզերանավերի և կրող հրթիռների սերիա: «Վ.»-ի ծրագրով լուծվել են թռիչքի ընթացքում անձնակազմի փոխգործողության մշակման խնդիրներ, ուսումնասիրվել բաց տիեզերքում մարդու աշխատելու հնարավորությունը, անցկացվել գիտ. և բժշկակենսբ. հետազոտություններ և տեխ. փորձեր: 1-ին անգամ կատարվել է 3-հոգանոց անձնակազմի (Վ. Մ. Կոմարով, Կ. Պ. Ֆեոկտիստով, Բ. Բ. Եգորով, 1964) թռիչք և իրականացվել մարդու 1-ին ելքը բաց տիեզերք (Ա. Ա. Լեոնով):

ՎՈՍԿՐԵՍԵՆՍԿԻ Ալեքսանդր Աբրամովիչ (1809–1880), ռուս. քիմիկոս-օրգանիկ: Ռուս քիմիկոսների դպրոցի հիմնադիրը (Ն. Ն. *Զինինի* հետ): Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1864): Հաստատել է (1838) նավթալինի և քինաթթվի բաղադրությունը և որոշ հատկություններ, հայտնագործել է քինոնը և *թևորբումինը* (1841), ուսումնասիրել է Ռուսաստանի այրվող օգտ. հանածոները (տորֆ, թերթաքարեր, գորշ ածուխ, քարածուխ), գովազդել է հանք. պարարտանյութերը:

«ՎՈՍՏՈԿ», 1. շուրջերկրյա ուղեծրով թռիչքների համար նախատեսված ռուս. մեկտեղանի տիեզերանավերի ու կրող հրթիռների սերիա: «Վ.»-ի ծրագրով ուսումնասիրել են մարդու տիեզ. թռիչքի հնարավորությունը, կատարել գիտ. և բժշկակենսբ. հետազոտություններ ու տեխ. փորձեր: «Վ.»-ի առյուծ զանգվածը 4,73 *տ* էր: 1-ին անգամ մարդը (Յու. *Գագարին*, 1961) թռել է տիեզերք, 1-ին անգամ իրականացվել են 2 տիեզերանավերի խմբային (Ա. Գ. Նիկոլաև, Պ. Ռ. Պոպովիչ, 1962) և 1-ին կին տիեզերագնացի (Վ. Վ. Տերեշկովա) թռիչքները: 1961–63-ին կատարվել է 6 թռիչք՝ 6 տիեզերագնացներով: 2. Եռաստիճան կրող հրթիռ. տիեզերանավեր արձակելու համար, որի բոլոր 3 աստիճաններն աշխատում են հեղուկ վառելիքով:

«ՎՈՍՏՈԿ», ռազմ. առագաստանավ: Կառուցվել է 1818-ին: Զրատարողությունը՝ 900 *տ*: 1819–21-ին Ֆ. Ֆ. *Բելլինսգհաուզենի* գլխավորությամբ «Վ.» և «Միրնի» նավերով իրազործվել է 1-ին ռուս. շուրջերկրյա հարավբևեռ. արշավը, որի ժամանակ հայտնաբերվել է Անտարկտիդան:

ՎՈՍՏՈԿՈՎ Ալեքսանդր Խրիստոֆորովիչ (1781–1864), ռուս բանասեր-սլավոնագետ, բանաստեղծ: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1841): Վ.-ի «Սլավոներենի քննախոսություն» (1820) ուսումնասիրությամբ սկզբնավորվել է սլավոն. համեմատ. լեզվաբանությունը Ռուսաստանում: Հրատարակել է «Օստրոմիրի Ավետարանը» (1843), մասնակցել «Եկեղեցասլավոներենի և ռուսերենի բառարանի» (հ. 1–4, 1847) կազմմանը, խմբագրել այն, կազմել է «Եկեղեցասլավոներենի բառարան» (հ. 1, 2, 1858, 1861):

ՎՈՍՏՈՐԳՈՎ Իվան Իվանովիչ (1864–1918), ռուս եկեղեց. և քաղ. գործիչ, ավագ երեց (1901): ՌՈՒԽ սուրբ (2000): Միապետ. շարժման առաջնորդներից, 1907–11-ին՝ Ռուս. ժող. միության, 1911–13-ին՝ Ռուս. միապետ. միության նախագահ: Հեղինակ է «Քրիստոնեությունը և սոցիալիզմը» (1906), «Հակասոցիալիստական կատեխիզիսի փորձը» (1911) և այլ աշխ-ների: Գնդակահարվել է «հակահեղափոխական գործունեության» մեղադրանքով:

ՎՈՎՉՈԿ Մարկո (Մարիա Վիլինսկայա Ալեքսանդրովնա, 1833–1907), ուկրաինացի գրող: Գրել է ուկր., ռուս. և ֆրանս.: Հեղինակ է «Ուկրաինական ժողովրդական պատմվածքներ» (հ. 1, 2, 1857, 1862), «Պատմվածքներ ռուսական ժողովրդական կենցաղից» (1859) ժող-ների, «Ուսանողուհին» (1860), «Երեք ճակատագիր» (1861), «Ճղարշե կինը» (1861), «Ամայության մեջ» (1875) և այլ վիպակների, «Տիրացուի նոթեր» (1869–70) հակակղեր. թեմայով վեպի:

ՎՈՏՉԱԼ Եվգենի Ֆիլիպովիչ (1864–1937), բույսերի ուկրաինացի ֆիզիոլոգ: Ուկրաինայի ֆիզիոլոգների գիտ. դպրոցի հիմնադիրը: Ուկր. ԽՍՀ ԳԱ ակադ. (1921): Աշխ-ները վերաբերում են ջրի շարժմանը ծառերում, բույսերի էլեկտրաֆիզիոլոգիային, շաքարի ճակնդեղի մասնավոր ֆիզիոլոգիային:

ՎՈՐԴՍՎՈՐԹ, **Ուորդսուորթ** (Wordsworth), Ուիլյամ (1770–1850), անգլիացի բանաստեղծ: Հեղինակ է «Լիրիկական բալլադներ»-ի (1798, համահեղ.՝ Ս. Թ. Քոլրիջ), որտեղ գովերգել է գյուղ. կյանքն ու մարդկանց, «Նախերգ» (1850) պոեմի, որտեղ իմաստավորել է սեփական հոգևոր ուղին: Քոլրիջի և Ռ. Սաութի հետ ստեղծել է «*լճային դպրոց*» խմբակը, որի

նպատակն անզլ. պոեզիայում ռոմանտիկ. հեղաշրջում անելն էր:

«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ՀԱՅԱՍՏԱՆ» (World Vision Armenia), մանկ. զարգացման միջազգ. բարեգործ. կազմ-յուն Հայաստանում: Գործում է 1988-ից: Օժանդակում է ՀՀ մարզերի և Երևանի ավելի քան 200 համայնքներում շուրջ 32 հզ. կարիքավոր երեխաների ու նրանց ընտանիքներին:

ՎՈՐԿՈՒՏԱ, ք. ՌԴ Կոմիի Հանրապետությունում՝ Բևեռ. շրջագծից հս: Բն.՝ 59,2 հզ. (2015): Երկթղ. կայարան է, Պեչորայի ածխավազանի կենտրոնը:

ՎՈՐՈԲՅՈՎ, Արկադի Նիկիտիչ (1924–2012), ռուս ծանրորդ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1952), ԽՍՀՄ վ. մ. (1964): Բժշկ. գիտ. դ-ր (1970): Օլիմպ. խաղերի (1956, 1960), աշխարհի, Եվրոպայի և ԽՍՀՄ բազմակի չեմպիոն և ռեկորդակիր (1950–59):

ՎՈՐՈԲՅՈՎ, Իվան Ալեքսեևիչ (1921–1991), ռուս գնդ. (1956), ԽՄ հերոս (1944, 1945): ՀՄՊ-ի ժամանակ ծառայել է գրոհ. ավիացիայում, եղել էսկադրիլիայի հրամ.: Կատարել է մոտ 400 մարտ. թռիչք:

ՎՈՐՈԲՅՈՎ, Միխայիլ Պետրովիչ (1896–1957), ռուս զորահրամ., ճարտարագիտ. զորքերի մարշալ (1944): ՀՄՊ-ի ժամանակ՝ Արմ. ռազմաճակատի ճարտարագիտ. զորքերի պետ, 1942–46-ին՝ Խորհրդ. բանակի ճարտարագիտ. զորքերի հրամ.:

ՎՈՐՈԲՅՈՎ, Վլադիմիր Պետրովիչ (1876–1937), ռուս անատոմ: Ուկրաինայի ֆիզիոլոգների գիտ. դպրոցի հիմնադիրը: Ուկր. ԽՍՀ ԳԱ ակադ. (1934): Աշակել է անատոմ. պատրաստուկների պատրաստման ծավալաձևաբան. մեթոդներ: Հեղինակ է «Մարդու անատոմիայի ատլասի» (հ. 1–5, 1938–42): Մասնակցել է Վ. Ի. Լենինի մարմնի զմոսմանը: Վ. Ի. Լենինի անվ. մրց. (1927):

ՎՈՐՈԲՅՈՎ, Վլադիմիր Պետրովիչ (1912–1992), ռուս նավաշինարար: Սոց. աշխ. հերոս (1963): Մարտ. նավերի նախագծման գլխ. կոնստրուկտոր: ԽՍՀՄ Պետ. (1949), Լենինյան (1970) մրց-ներ:

ՎՈՐՈԺԵՅԿԻՆ Գրիգորի Ալեքսանդրովիչ (1895–1974), ռուս զորահրամ., ավիացիայի մարշալ (1944): ՀՄՊ-ի ժամանակ՝ Կենտր. ռազմաճակատի ՌՕՈՒ գլխ. հրամ., Կարմիր բանակի ՌՕՈՒ շտաբի պետ, 1942–46-ին՝ ՌՕՈՒ գլխ. հրամ-ի 1-ին տեղակալ:

ՎՈՐՈՆԵԺ, ք. ՌԴ-ում, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 843 հզ. (2009): Հիմնադրվել է 1585-ին որպես ամրոց: Կան XVII–XIX դդ-ի ճարտ. հուշարձաններ:

ՎՈՐՈՆԵԺԻ ՄԱՐԶ, վտմ ՌԴ Կենտր. դաշն. օկրուգում: Տարածքը՝ 52,4 հզ. *կմ*^{2}, բն.՝ 2,27 մլն (2009): Վարչ. կենտրոնը՝ *Վորոնեժ*: Ունի 31 շրջան, 15 քաղաք, 21 քտա: Կազմավորվել է 1934-ին:

ՎՈՐՈՆԻԽԻՆ Անդրեյ Նիկիֆորովիչ (1759–1814), ռուս. ճարտ.: Ս. Պետերբուրգում կառուցել է Կազանյան տաճարը (1801–11) և Լեռն. ինստ-ը (1806–11), որոնք առանձնանում են մոնումենտալությամբ և հանդիսավորությամբ:

ՎՈՐՈՆԻՆ Լեոնիդ Գրիգորևիչ (1908–1983), ռուս ֆիզիոլոգ: ԽՍՀՄ ԳԱ (1968) և ԽՍՀՄ ՄԳԱ (1968) թղթ. անդամ: Աշխ-ները վերաբերում են պայման. ռեֆլեքսներին, բարձրագույն նյարդ. գործունեության ֆիզիոլոգիային և էվոլյուցիային:

ՎՈՐՈՆԻՆ Միխայիլ Յակովլևիչ (1945–2004), ռուս մարմնամարզիկ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1966), ԽՍՀՄ վ. մ. (1980): Աշխարհի (1966), Եվրոպայի (1967, 1969) և ԽՍՀՄ (1967–71) բացարձակ չեմպիոն: Օլիմպ. խաղերի կրկնակի (1968), աշխարհի (1966), Եվրոպայի (1967–71) և ԽՍՀՄ (1966–72) չեմպիոն՝ բազմամարտի առանձին ձևերում:

ՎՈՐՈՆԿՈՎ, Միխայիլ Գրիգորևիչ (1921–2014), ռուս քիմիկոս-օրգանիկ, կենսասիլիցիումօրգ. քիմիայի հիմնադիրներից: ՌԳԱ ակադ. (1990), Լատվ. ԳԱ արտ., Մոնղոլիայի ԳԱ պատվ. անդամ: Աշխ-ները վերաբերում են սիլիցիում- և ծծումբօրգ. միացություններին: ՌԴ Պետ. մրց. (1997):

ՎՈՐՈՆՈՅ Յուրի Յուրևիչ (1895–1961), ուկրաինացի վիրաբույժ: Աշխարհում առաջինն է կլինիկայում իրականացրել (1933) դիակի երիկամի փոխպատվաստումը հիվանդին:

ՎՈՐՈՆՈՎ, Ավենիր Արկադևիչ (1910–1992), ավտոմատիկայի և հաշվող. տեխնիկայի բնագավառի ռուս. գիտնական: ՌԳԱ ակադ. (1970): Աշխ-ները վերաբերում են ավտոմատ կառավարման տեսությանը, ծրագր. կառավարման համար թվային հաշվող. սարքավորումների սինթեզին: Լենինյան մրց. (1988):

ՎՈՐՈՆՈՎ, Գենադի Իվանովիչ (1910–1994), ռուս քաղ. գործիչ: 1962–71-ին՝ ՌԽՖՍՀ ՆԽ, 1971–73-ին՝ ԽՍՀՄ Ժող. վերահսկողության կոմիտեի նախագահ:

ՎՈՐՈՆՈՎ, Նիկոլայ Նիկոլաևիչ (1899–1968), ռուս զորահրամ., հրետանու գլխ. մարշալ (1944): ԽՄ հերոս (1965): ՀՄՊ-ի ժամանակ՝ Կարմիր բանակի հրետանու գլխ. հրամ., Գլխ. հրամանատարության ներկայացուցիչը ռազմաճակատներում մի շարք գործողությունների իրականացման ժամանակ:

ՎՈՐՈՆՅՈՎ, Միխայիլ Սեմյոնովիչ (1782–1856), ռուս պետ. գործիչ, գեն-ֆլդմ. (1856), պայծառափայլ իշխան: Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. անդամ (1826): 1823–44-ին՝ Նովոռոսիայի և Բեսարաբիայի գեն-նահանգապետ: 1844–54-ին՝ Կովկասի փոխարքա և Կովկասյան առանձին կորպուսի գլխ. հրամ.:

ՎՈՐՈՆՅՈՎ-ԴԱՇԿՈՎ, Իլարիոն Իվանովիչ (1837–1916), կոմս, ռուս. պետ. գործիչ, գեն-լեյտ.: 1905–15-ին՝ Կովկասի փոխարքա: Նրա պնդմամբ Նիկոլայ II-ը 1905-ի օգոստ. 1-ին ստորագրել է հրամանագիր՝ 1903-ին բռնագրավված հայկ. եկեղեց. ունեցվածքը (տես *Եկեղեցական գույքի բռնագրավման օրենք 1903*) վերադարձնելու և հայկ. դպրոցները վերաբացելու մասին: Նրա միջնորդությամբ ցար. կառյունն ստանձնել է Թուրքիայում հայկ. բարեգործ. հաստատությունների (տես *Հայկական բարեգործական հաստատություններ 1913–14*) անցկացման նախաձեռնությունը: ԱՀՊ-ի ժամանակ՝ 1914-ի սեպտ-ից ձեռնամուխ է եղել հայկ. կամավոր. գնդերի կազմակերպմանը Թուրքիայի դեմ պատերազմելու համար:

ՎՈՐՈՇԻԼՈՎ, Կլիմենտ Եֆրեմովիչ (1881–1969), խորհրդ. պետ., կուս. և ռազմ. գործիչ: ԽՍՀՄ մարշալ (1935): ԽՄ հերոս (1956, 1968): Սոց. աշխ. հերոս (1960): 1925-ից՝ ԽՍՀՄ ռազմածով. ժողկոմ, ԽՍՀՄ ՌԿԳ նախագահ, 1934-ից՝ ԽՍՀՄ պաշտպ-յան Ժողկոմ, 1940-ից՝ ԽՍՀՄ ԺԿԽ նախագահի տեղակալ և ԽՍՀՄ ԺԿԽ-ին կից Պաշտպ-յան կոմիտեի նախագահ: ՀՄՊ-ի տարիներին եղել է Պաշտպ-յան պետ. կոմիտեի անդամ, Հս-արմ. ուղղության զորքերի գլխ., Լենինգրադյան ռազմաճակատի զորքերի հրամ.: Մասնակցել է *Թեհրանի խորհրդաժողովին* (1943): 1946-ից՝ ԽՍՀՄ ՆԽ նախագահի տեղակալ, 1953-ից՝ ԽՍՀՄ ԳԽ նախագահության նախագահ:

ՎՈՐՈՎԻՉ Իոսիֆ Իզրաիլևիչ (1920–2001), ռուս մեխանիկոս: ՌԳԱ ակադ. (1990): Աշխ-ները վերաբերում են հոծ միջավայրերի մեխանիկային, թաղանթների ոչ գծային տեսությանը, առաձգականության տեսությանը:

ԽՍՀՄ (1983), ՌԴ (1998) Պետ. մրց-ներ:

ՎՈՐՈՏՆԻԿՈՎ, Վիտալի Իվանովիչ (1926–2012), ռուս պետ. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1986): 1975-ից՝ ՌԽՖՍՀ ՆԽ նախագահի 1-ին տեղակալ, 1979-ից՝ ԽՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան Կուբայում, 1983-ից՝ ՌԽՖՍՀ ՆԽ նախագահ, 1988–90-ին՝ ՌԽՖՍՀ ԳԽ նախագահության նախագահ:

ՎՈՔԼԵՆ (*Vauquelin*) Լուի Նիկոլա (1763–1829), ֆրանսիացի քիմիկոս: Հայտնաբերել է (1797) և ազատ վիճակում անջատել *քրոմը*, *բերիլիումը* (1798):

ՎՈՒԱՄՅԱՆ Արշակ (Դերձակյան Օնիկ), **Վահապ, Վարազ** (1870–1915), ազգ-ազատագր. շարժման գործիչ: ՀՀԴ կուս-յան անդամ՝ 1894-ից: 1896-ին մասնակցել է օսմ. բանկի («Բանկ Օտոման») գրավման նախապատրաստ. աշխ-ներին, ձերբակալվել է, սակայն կարողացել է փախչել: 1908-ի երիտթուրք. հեղաշրջումից հետո Կ. Պոլսում ընտրվել է օսմ. խորհրդարանի երեսփոխան: Դարձել է Վանի նահանգապետ Ջևդեթի դավադրության զոհը:

ՎՈՒԱՄՇԱՊՈՒՀ (ծ. թ. անհտ–414), Հայոց Արշակունի թագավոր՝ 389-ից: Հաջորդել է եղբորը՝ *Խոսրով Գ*-ին: Վ.-ի հոգածությամբ Հայոց կաթողիկոս. աթոռին վերահաստատվել է *Սահակ Ա. Պարթևը*, իսկ նրա տեղապահ է ընտրվել *Մեսրոպ Մաշտոցը*: 398/399-ին մեկնել է Հայոց Միջագետք և հաշտարար-միջնորդի դերով կանխել պարսկա-հռոմ. զորաբախումները: Աջակցել է Սահակ Ա Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի՝ հայ գրերի ստեղծման և լուսավորչ. ձեռնարկումներին:

ՎՈՒՈՒԲԵԼ, Միխայիլ Ալեքսանդրովիչ (1856–1910), ռուս. գեղանկարիչ, գրաֆիկ, բեմանկարիչ: Գործերը («Դև», 1890, «Եղրևանի», 1900) աչքի են ընկնում գուներանգի դրամատիկ. լարվածությամբ, հատակությամբ, ուրվանկարի կոնստրուկտիվությամբ, հաճախ՝ ողբերգ. երանգով, խորհրդանշ. կերպարների ընդհանրացվածությամբ: Հեղինակ է նաև պատկերազարդումների (Մ. Յ. Լերմոնտովի «Դև», 1890–91), որմանկարների (Կիևի Կիրիլովսկի եկեղեցում, 1884–89), դիմանկարների («Ս. Ի. Մամոնտով», 1897), դեկորատիվ-կիրառ. արվ-ի գործերի (էսքիզներ ջնարակված խեցե քանդակների համար): Վ.-ի մի շարք նկարներ (նաև Հ. Շամչինյանի դիմանկարը, 1883) ՀԱՊ-ում են և Ա. Աբրահամյանի հավաքածուում:

ՎՎԵԴԵՆՍԿԻ Ալեքսանդր Իվանովիչ (1904–1941), ռուս բանաստեղծ: Հեղինակ է «Սառը քրտինք», «Զրույցների որոշ քանակություն» (երկուսն էլ՝ 1936/37) և այլ պոեմների, «Էլեգիա», «Որտնի՞ Երբ» բանաստեղծությունների ժող-ների, «Իվանովների տոնածառը» (1939) պիեսի, որով սկզբնավորել է աբսուրդի դրաման: Մահացել է բանտում:

ՎՎԵԴԵՆՍԿԻ Բորիս Ալեքսեևիչ (1893–1969), ռուս. ռադիոֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1943): Սոց. աշխ. հերոս (1963):

Աշխ–ները վերաբերում են գերկարճ տիրույթի ռադիոալիքների տարածմանը: Խորհրդ. մեծ հանրագիտարանի գլխ. խմբ. (1951–69): ԽՍՀՄ Պետ. մրց. (1952):

ՎՎԵԴԵՆՍԿԻ `Նիկոլայ Եվգենևիչ (1852–1922), ռուս. ֆիզիոլոգ: Գիտ. դպրոցի հիմնադիր: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1908): Հետազոտել է տարբեր գրգռիչների հանդեպ հյուսվածքների հակազդեցության օրինաչափությունները, մշակել գրգռիչի լավագույնի և վատագույնի մասին ուսմունք, բացահայտել հյուսվածքների հարաբեր. ֆունկցիոնալ շարժունության օրենքը: Զարգացրել է պարաբիոզի և դրդման ու արգելակման բնույթի միասնության մասին պատկերացումները:

«ՎԱՏԱԿ», գր–բանասիր. ժող. (1901, Թիֆլիս): Խմբ.՝ Վրթանես Փափազյան:

«ՎԱՏԲ–ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ, առևտր. բանկ ՀՀ–ում: «Հայխնայբանկ» ՓԲԸ–ի (հիմն.՝ 1923) իրավահաջորդը: 2004–ին ռուս. պետ. «Վնեշտորգբանկ» ԲԲԸ–ն (ՎԱՏԲ բանկ ԲԲԸ) ձեռք է բերել «Հայխնայբանկի» բաժնետոմսերի 70 %–ը: 2006–ին բանկը վերանվանվել է «ՎԱՏԲ–Հ. բ.»: 2007–ից՝ միանձնյա սեփականատեր:

ՎՐԱԶ (Vraz) Ստանկո (1810–1851), խորվաթ. բանաստեղծ: Նպաստել է գր. լեզվով ազգ. ինքնուրույն գրկ–յան զարգացմանը: Հեղինակ է սիրային և քաղաքաց. թեմաներով «Զայներ Ժարավինյան թավուտից» (1841), «Տավիղ և թմբուկ» (1845) բանաստեղծությունների ժող–ների:

ՎՐԱՆԳԵԼ Պյոտր Նիկոլաևիչ (1878–1928), Ռուսաստանում քաղաքաց. պատերազմի ժամանակ Սպիտակ շարժման ղեկ–ներից, գեն–լեյտ. (1918): 1919–ից՝ Կովկաս. բանակի, 1919–ի դեկտ–1920–ի հունվ–ին՝ կամավոր. բանակի հրամ.: 1920–ին՝ Ղրիմում ռուս. բանակի գլխ. հրամ.: 1920–ից՝ վտարանդի:

ՎՐԱՆԳԵԼ Ֆերդինանդ Պետրովիչ (1796/97–1870), ռուս. ծովագնաց, ծովակալ: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. (1827), պատվ. (1855) անդամ: Ռուս. աշխարհագր. ընկ–յան հիմնադիրներից: 1820–24–ին ղեկավարել է Սիբիրի՝ Ինդիգիրկա գետից Կոլյուչինի ծովախորշն ընկած ափամերձ շրջանների ուսումնասիրությունը, հարցումներով ճշտել է մի կղզու դիրքը, որը հետագայում կոչվել է Վ–ի անունով (մակերեսը՝ 7300 *կմ*^{2}): 1825–27–ին գլխավորել է շուրջերկրյա ճանապարհորդություն «Կրոտկի» նավով: 1829–35–ին եղել է Ամերիկայում ռուս. ընակավայրերի կառավարիչը, 1855–57–ին՝ ծով. նախարար:

ՎՐԱՍՏԱՆ, պետություն Հվ. Կովկասում: Սահմանակից է ՌԴ–ին, Ադրբեջանին, ՀՀ–ին և Թուրքիային: Տարածքը՝ 69,7 հզ. *կմ*^{2}, բն.՝ 3,7 մլն (2015): Մայրաքաղաքը՝ *Թբիլիսի:* Պետ. լեզուն՝ վրաց.: Կառավարման ձևը՝ խորհրդարան. հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Հավատացյալների մեծ մասն ուղղափառ քրիստոնյա է, կան նաև մահմեդականներ և ՀԱԵ հետևորդներ: Բաժանված է 19 վարչ. միավորների: Անդամակցում է ՄԱԿ–ին, ԵԱՀԿ–ին, ԵԽ–ին, ՎՈՒԱՄ–ին ևն: Անցումային տնտ–յամբ երկիր է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 3,5 հզ. ԱՄՆ դոլար է (2015): Արտահանում է ցիտրուս. մրգեր, գինի, թեյ, ձուկ, մետաղներ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք, բնական գազ, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ լարի:

Մ. թ. ա. VI դ–ում Արմ. Վ–ի տարածքում ձևավորվել է Կոլխիդայի թագավորությունը, IV դ–ում Արլ. Վ.–ում՝ Իբերիայի թագավորությունը: Մ. թ. VI–X դդ–ում Վ. եղել է Սասանյան Պարսկաստանի, ապա՝ Բյուզանդիայի և Արաբ. խալիֆության տիրապետության տակ: VIII դ–ի վերջ–IX դ–ի սկզբին կազմավորվել են Կախեթի, Հերեթի, Աբխազիայի թագավորությունները ու իշխանությունները: XIII–XIV դդ–ում ենթարկվել է թաթար մոնղոլների և Լանկ Թամուրի արշավանքներին: XV դ–ի վերջին երկիրը բաժանվել է անկախ թագավորությունների ու իշխանությունների՝ Քարթլիի, Իմերեթիայի, Կախեթի, Մեգրելիայի, Գուրիայի, Աբխազիայի: XVI–XVIII դդ–ում դարձել է Թուրքիայի և Իրանի միջև ընդհարումների թատերարեմ: Հայտնի է Գ. Սասակաձեի գլխավորությամբ 1625–ի ապստամբությունը պարսկ. լծի դեմ: 1783–ին Գեորգիևսկի պայմանագրով Հերակլ II թագավորը ճանաչել է Ռուսաստանի հովանավորությունը և հրաժարվել ինքնուրույն արտաքին քաղ–յունից: 1801–ին՝ Արլ. Վ., 1803–64–ին Արմ. Վ. միացել են Ռուսաստանին և կազմել Թիֆլիսի ու Քութայիսի նահգ–ները: 1918–ին Վ. են մտել գերմ., թուրք. և անգլ. զորամիավորումներ, մայիսին հռչակվել է Վ–ի Դեմոկրատ. Հանրապետությունը: 1921–ի փետր–ին երկիրը խորհրդայնացվել է, և ստեղծվել է Վրաց. ԽՍՀ, որը 1922–ին մտել է Անդրֆեդերացիայի, 1936–ից՝ անմիջականորեն ԽՍՀՄ կազմի մեջ՝ որպես միութ. հանրապետություն: ԽՍՀՄ փլուզումից հետո՝ 1991–ին Վ. հռչակվել է անկախ պետություն: Վ–ի կազմի մեջ մտնող Աբխազիայի ԽԻՀ–ն և Հարավս. ԻՄ–ն սկսել են անկախության համար պայքար, որը շուտով վերածվել է զինված բախման: 1992–ին Աբխազիան և Հվ. Օսիան հռչակել են իրենց անկախությունը, 1992–94–ին տեղի են ունեցել զինված բախումներ նրանց և Վ–ի միջև:

Հվ. Օսիայի հետ զինված բախումները կրկնվել են 2008–ի օգոստ–ին, երբ Վ. փորձել է ուժով հետ վերցնել այն, իսկ Ռուսաստանն այդ ազգ. փոքրամասնությանն օգնել է ռազմ. ուժով, ապա ճանաչել է Աբխազիայի ու Հվ. Օսիայի անկախությունը:

Վրացահայերն զգալի դեր են խաղացել այս երկրի տնտ., մշակութ. և քաղ. կյանքում: Թբիլիսիում ստեղծագործել են գրողներ Խաչատուր Աբովյանը, Րաֆֆին, Հովհաննես Թումանյանը (1899–ին հիմնադրել է «*Վերնատուն*» գր. ակումբը), Գաբրիել Սունդուկյանը, Ղազարոս Աղայանը, Նար–Դոսը, Մուրացանը, Հակոբ Հակոբյանը, Պերճ Պռոշյանը, Ծերենցը, Ալեքսանդր Ծատուրյանը, Ալեքսանդր Շիրվանզադեն, Վահան Տերյանը և ուր., հայկ. երաժշտության դասականներ Մակար Եկմալյանը, Քրիստափոր Կարա–Մուրզան, Ալեքսանդր Մելիք–Փաշաևը, Արմեն Տիգրանյանը, գեղանկարիչներ Հակոբ Հովնաթանյանը, Գևորգ Բաշինջաղյանը, Ալեքսանդր Բաժբեուկ–Մելիքյանը, «Գոռուզիա–ֆիլմ» կինոստուդիայի հիմնադիր Համո Բեկ–Նազարյանը, Սերգեյ Փարաջանովը և ուր.: Վրաց գրկ–յան մեջ պատվ. տեղ ունեն Սայաթ–Նովան, Ջուրաբ Անտոնովը, Միխեիլ և Գեորգի Թումանովները (Թումանիշվիլի), Ա. Հախնազարովը և ուր.: Թբիլիսիի շինություններից շատերը նախագծել են ճարտ–ներ Միքայել Օհանջանովը, Գաբրիել Տեր–Միքելովը, Քրիստափոր Տեր–Սարգսյանը (Սարկիսով, Սաթունց): VII–XIX դդ–ում Վ–ի տարածքում հայերը կառուցել են ավելի քան 600 հայկ. եկեղեցիներ: XII դ–ում ձևավորվել և այսօր էլ գործում է ՀԱԵ Վ–ի թեմը (հոգևոր առաջնորդ՝ Վազգեն եպս. Միրզախանյան՝ 2002–ից), 46 հայկ. եկեղեցիներ, որոնցից 6–ը համարվում են վիճելի հայ առաքել. և վրաց ուղղափառ եկեղեցիների միջև: Նշանավոր են Սբ Գևորգ առաջնորդանիստ և Սբ Էջմիածնեցոնց (Թբիլիսի), Սբ Խաչ (Ախալքալաք), Սբ Սարգիս (Նինոծմինդա), Սբ Գրիգոր Լուսավորիչ (Ախալցխա) և Սբ Փրկիչ (Բաթումի) եկեղեցիները: 1920–ից հրատարակվում է *«Վրաստան»* թերթը: 1856–ից Թիֆլիսում գործում է Պետրոս Ադամյանի անվ. հայկ. դրամատիկ. թատրոնը (1994–ից՝ գեղ. ղեկ–տնօրեն՝ Արմեն Բայանդուրյան):

Ներկայում Վ–ում գործում են շուրջ 150 հայկ. դպրոցներ, որոնցից մոտ 100–ը՝ Ջավախքում և 3–ը՝ Թբիլիսիում (երկուսը՝ որպես հայկ. մասնաճյուղ՝ վրաց. դպրոցում), շուրջ 40–ը՝ Աբխազիայում: Վ–ում կան շուրջ 27 հայկ. հաս. կազմ–յուններ («Ջավախք ժողովրդական շարժում», «Փարվանա», «Աջարիայի հայերի միություն», Երիտասարդական միություն, «Վրաստանի հայերի միություն» ևն):

«ՎՐԱՍՏԱՆ», հաս–քաղ. պարբերաթերթ (1920–ից, Թբիլիսի, մինչև 1990–ը՝ «Կարմիր աստղ», «Սարտակոչ», «Պրոլետար», «Խորհրդային Վրաստան», «Սովետական Վրաստան»): Սկզբում՝ Վրաստանի կոմկուսի ԿԿ, ՎԽՍՀ ԳԽ և ՆԽ, 1992–ից՝ Վրաստանի խորհրդարանի պաշտոնաթերթ, 1996–ից՝ անկախ: Խմբ–ներ՝ Սմբատ Դովլաթյան, Սուրեն Երզնկյան, Սարգիս Կասյան, Ալեքսանդր Մյասնիկյան, Սարգիս Խանոյան, Աշոտ Խումարյան, Արշավիր Մելիքյան, Աղասի Վարդանյան, Վարդան Ատրյան, Հովհաննես Պողոսյան, Աշոտ Մարգարյան, Արշավիր Գասպարյան, Զավեն Պողոսյան, Հակոբ Բլրցյան, Վան Բայբուրթյան (1987–ից): Տարբեր տարիների ունեցել է գր–գեղ., հաս–քաղ. հանդես–հավելվածներ:

ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՐՋԱՆԻՇՎԻԼՈՒ ԱՆՎԱՆ ԹԱՏՐՈՆ պետական ակադեմիական, բացվել է 1928–ին Քութայիսում (2–րդ պետ. դրամատիկ. թատրոն)՝ Կ. Մարջանիշվիլու նախաձեռնությամբ և ղեկավարությամբ, 1930–ին փոխադրվել է Թիֆլիս, 1933–ին՝ Կ. Մարջանիշվիլու անվ., 1966–ից՝ ակադեմ:

ՎՐԱՍՏԱՆԻ ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ԱՆՎԱՆ ԹԱՏՐՈՆ պետական ակադեմիական (1966–ից), հիմնադրվել է 1921–ին Թիֆլիսում, նույն թվականից՝ Շ. Ռուսթավելու անվ.:

ՎՐԱՍՏԱՆԻ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԹԱՏՐՈՆ Զ. Փալիաշվիլու անվան (1937–ից), հիմնադրվել է 1851–ին Թիֆլիսում (1963–ից՝ ակադեմ.): Որպես վրաց. ազգ. թատրոն՝ ձևավորվել է 1919–ին: Մասնաճյուղ ունի Քութայիսում (1969–ից):

ՎՐԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, կովկասագիտության ճյուղերից: Ուսումնասիրում է վրաց ժողդ–ի պատմությունը, բանահյուսությունը, կենցաղը, լեզուն, գրկ–ն ու արվ–ը:

Վրացագիտ. անդրանիկ նյութերը հրապարակվել են XVII դ–ում: Հայաստանում վրացագիտ. աշխ–ներ են կատարել Գ. Ղափանցյանը, Ս. Երեմյանը, Վ. Մարտիրոսյանը, Պ. Սուրադյանը և ուր.: Վ. ՀԽՍՀ–ում սկզբնավորվել է ԵՊՀ–ում 1966–ից. հիմնադրվել է Շոթա Ռուսթավելու անվ. կաբինետ՝ Գ. Սևակի ղեկավարությամբ: 2006–ից ԵՊՀ–ում բացվել է Վ–յան հայկ. կենտրոն (ղեկ.՝ Հրաչիկ Բայրամյան):

ՎՐԱՑԱԿԱՆ ԳԻՐ, վրաց–ի գրային համակարգը: Հնագույն հուշարձաններն ավանդվել են V դ–ից: Կարդացվում է ձախից աջ: Վ. գ–ում մեծատառերի հատուկ ձևեր չկան: Ըստ Կորյունի՝ Վ. գ. ստեղծել է *Մեսրոպ Մաշտոցը*:

«ՎՐԱՑԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ», վրաց. առաջին համապարփակ հանրագիտարանը: Լույս է տեսել 1975–87–ին (հ. 1–12, 12–րդը՝ վրաց. և ռուս., նվիրված է ՎԽՍՀ–ին): Գլխ. խմբ.՝ Ի. Վ. Աբաշիձե:

ՎՐԱՑԵՐԵՆ, *վրացիների* ազգ., Վրաստանի պետ. լեզուն: Պատկանում է իբեռա–կովկաս. լեզվաընտանիքի քարթվել. (իբեր.) ճյուղին: Հնագույն գրավոր հուշարձաններն ավանդվել են V դ–ից: Բաժանվում է 2 փուլի՝ հին (V–XI դդ.) և նոր (XII դ–ից սկսած): Գրի հիմքում վրաց. այբուբենն է:

ՎՐԱՑԻՆԵՐ (ինքնանվանումը՝ քարթվելներ), ժողդ, Վրաստանի հիմն. բնակչությունը (3,2 մլն): Ընդհ. թիվը՝ 4 մլն (2014): Ապրում են նաև ՌԴ–ում (158,7 հզ.), Թուրքիայում, Իրանում, Ուկրաինայում ևն: Լեզուն՝ վրաց.: Հավատացյալները հիմնականում ուղղափառ քրիստոնյա են:

«ՎՐԱՑԻՆՖՈՐՄ», Վրաստանի ՆԽ տեղեկատվ. գործակալություն: Հիմնադրվել է 1921–ին՝ որպես Ռուս. հեռագր. գործակալության համակովկաս. վարչության բաժանմունք, 1936–ից՝ Վրաց. հեռագր. գործակալություն, 1990–ից՝ «Սաքարթվելո» ազգ. տեղեկատվ. գործակալություն:

ՎՐԱՑՅԱՆ Սիմոն Ղազարի (Գոռուզյան, Գրուզինյան, 1882–1969), քաղ., պետ. գործիչ: ՀՀԴ կուս–յան անդամ: 1914–ին Թիֆլիսում զբաղվել է հայկ. կամավոր. գնդերի կազմավորման գործով: 1917–ին ընտրվել Ազգ. խորհրդի, ապա՝ նաև Անդրկովկասի Սեյմի անդամ: Հայաստանի անկախության հռչակումից հետո նշանակվել է դիվանագիտ. առաքելության ղեկ. Հվ. Ռուսաստանի կամավոր. բանակում: 1920–ի մայիսից՝ ՀՀ գղտ–յան և աշխ–ի նախարար, 1920–ի նոյեմբ. 23–ից՝ ՀՀ վարչապետ, ՆԳ նախարար: 1920–ի դեկտ. 2–ին ՌԽՖՍՀ կառ–յան հետ համաձայնագրով Վ–ի Կառ–յունը հրաժարվել է իշխանությունից: 1921–ի Փետր. ապստամբության ժամանակ ընտրվել է Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ: 1921–ի օգոստ–ից՝ վտարանդի: 1951–ից՝ Բեյրութի «Նշան Փալանջյան» վարժարանի տնօրեն: Հեղինակ է «Հայաստանի Հանրապետութիւն» (1928) աշխ–յան, «Կեանքի ուղիներով» (հ. 1–6, 1955–67) հուշագրության ևն:

ՎՐԵԴԵՆ Ռոման Ռոմանովիչ (1867–1934), ռուս. վիրաբույժ: Կազմակերպել և ղեկավարել է (1906–34) Ռուսաստանում առաջին օրթոպեդ. ինստ–ը: Առաջարկել և ներդրել է օրթոպեդ. մի շարք վիրահատություններ, որոնք կոչվում են Վ–ի անունով:

«ՎՐԵՄՅԱ» (“Время” – «Ժամանակ»), գր., քաղ. ամսագիր (1861–63, Ս. Պետերբուրգ): Խմբ–հրտ.՝ Մ. Մ. Դոստոևսկի (փաստացի խմբ.՝ Ֆ. Մ. Դոստոևսկի): Արմատականների պաշտոնաթերթ:

ՎՐԵՎՄԿԻ Միխայիլ Ստեպանովիչ (1871–1929), ռուս. ֆիզքիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1929): Աշխ–ները վերաբերում են լուծույթների թերմոդինամիկային: Հաստատել է (1911) լուծույթի գոլորշիների բաղադրության՝ նրա բաղադրիչների գոլորշիացման ջերմությունից և ջերմաստիճանից կախումն արտահայտող օրենքներ (Վ–ի օրենքներ): Լենինյան մրց. (1929):

ՎՐԹԱՆԵՍ Ա. ՊԱՐԹԵՎ, սուրբ Վրթանես (մոտ 285–341), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 333–ից: ՀԱԵ տոնելի սուրբ: *Գրիգոր Ա. Լուսավորչի* ավագ որդին: Մինչև հոգևորական ձեռնադրվելը եղել է գինվորական: Կեսարիայից Վաղարշապատ է եկել *Տրդատ Գ*–ի հրավերով: Մասնակցել է պետ. գործերին, աջակցել *Խոսրով Բ Կոտակին*: Պայքարել է հեթանոսության մնացուկների դեմ, ամրապնդել քրիստոնեությունը:

ՎՐԹԱՆԵՍ ՍՈՒՆԿԵՑԻ (Կաֆացի, հավանաբար՝ XVI դ–ի սկիզբ–1570–ական թթ.), հայ տաղերգու: Կաֆայում եղել է եպս.: Հեղինակ է 2 վկայաբան. ոտանավորների՝ 1567–ին Կաֆայում նահատակված Պարոն Լույսի մասին և մի քանի ոտանավորնամակների՝ ուղղված Լվովի հայոց արք. Գրիգոր Վարագեցուն: Արժեքավոր են «Ի վերայ Կաֆայուղութեան» և «Ոտանաւոր նորին Վրթանէսի ասացեալ…» բանաստեղծությունները: Ոտանավորները պահվում են Մոնղ–ում (ձեռ. № 3081, 9425):

ՎՐԹԱՆԵՍ ՔԵՐԹՈՂ, VI դ–ի վերջ–VII դ–ի սկզբի մատենագիր, եկեղեց. գործիչ: Կաթողիկոս. տեղապահ՝ 604–607–ին: Ժամանակակիցները նրան կոչել են **Քերթող**: Վ. Ք–ի անվամբ մեզ են հասել մի շարք երկեր, նաև հայոց և վրաց եկեղեցիների նշանավոր գործիչներին ուղղված նամակներ: Գրել է Հռիփսիմեի տաճարի շինության համառոտ պատմությունը: Հիշատակել է Գրիգոր Լուսավորչին, Հռիփսիմեին, Գայանեին և այլ նահատակների պատկերող որմնանկարների գոյության փաստը Հայաստանում:

ՎՐՁՆԱԼՈՂԱԿՆԵՐ (Crossopterygii), թիալողակավոր ձկների վերնակարգ: Հայտնի են ստորին դևոնից. միջին դևոնում նրանցից սկիզբ են առել ցամաք. ողնաշարավորները: Մարմնի երկ.՝ 7 *սմ*–5 *մ*: Ջույգ լողակները մկանուտ թիակով են: Ընդգրկում է բրածո 4 և ժամանակակից 1 կարգ (ցելականտանմաններ)՝ 2 տեսակով՝ լատիմերիա և ինդոնեզ. լատիմերիա:

ՎՐՁՆԱՄՈՒՆԿ (Penicillum), անկատար սնկերի ցեղ: Հայտնի է 250 տեսակ, ՀՀ–ում՝ 125՝ բոլոր մարզերում: Ապրում են հողում, որտեղից տարածվում է զանազան հիմանայութերի վրա: Մակամարմինն առաջացնում է տարբեր ձևերի և գույների գաղութներ: Սապրոտրոֆ են, կան նաև մակաբույծներ: Վ–ի մի շարք տեսակներ հայտնի են որպես ֆերմենտների պրոդուցենտներ: Որոշ տեսակներ (ոռքֆորային Վ., կամեմբեր Վ. ևն) կիրառվում են պանրագործության մեջ:

ՎՐՈՆՍԿԻ (Wroński, իսկական ազգանունը՝ Հոնե, Hoene) Յուզեֆ (1776–1853), լեհ մաթեմատիկոս և միստիկ–փիլ.: Ներմուծել է որոշիչ, որը կիրառվում է գծային դիֆերենցիալ հավասարումներում (Վ–ի որոշիչ):

ՎՐՈՑԼԱՎ (Wroclaw), ք. Լեհաստանի հվ–արմ–ում, նվինգստ Օդրա գետի ափին, Ստորինսիլեզյան վոյեվոդության վարչ. կենտրոնը: Բն.՝ 630 հզ. (2010): Տրանսպորտ. հանգույց է: Ունի օդանավակայան: Առաջին անգամ հիշատակվել է X դ–ում:

ՎՐՎԵՌ, Թոնդրակյան շարժման գործիչ (X դ–ի վերջ–XI դ–ի սկիզբ): Եղել է իշխան, կալվածներ է ունեցել Մանանաղի գվռում: Հակվելով գվռ–ում Կունձիկ Արեղայի գլխավորությամբ բռնկված Թոնդրակյան շարժմանը՝ գործակցել է Կամարա և Ախնի քույրերի հետ, Կաշև և Աղյուսո գ–երում նրանց հետ կազմակերպել թոնդրակյան համայնքներ:

ՎՐՈՒՅՐ, դերասանների ընտանիք: **Արամ Մինասի Վ.** (Մաքաշչյան, 1863–1924), դերասան, ռեժ., թատեր. գործիչ: 1882–ից հանդես է եկել Թիֆլիսի, Բաքվի թատերախմբերում, Կ. Պոլսում և Թիֆլիսում բեմադրել է Գ. Սունդուկյանի «Պեպոն» (1890), Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբարը», «Մեծապատիվ մուրացկանները» (երկուսն էլ՝ 1895), խաղացել գլխ. դերերը: Լավագույն անձնավորումներից են նաև Օրգոն (Մոլիերի «Տարտյուֆ»), Քավոր Պետրոս («Խաչագողի հիշատակարանը» ըստ Րաֆֆու), Լյապկին–Տյապկին (Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր») ևն: Հեղինակ է մի շարք բեմավորումների, պիեսների: 1907–13–ին (ընդհատումով) խմբագրել և հրատարակել է «Հուշարար» հանդեսը, գրաղվել հնագիտ. նյութերի լուսանկարչությամբ, մասնակցել է Ն. Մառի գիտարշավներին (1904–17): Կինը՝ **Նունե Վ.** (1876–1951), դերասանուհի: 1896–ից խաղացել է Բաքվի, Թիֆլիսի հայկ. թատերախմբերում (Անուշ, Շողակաթ՝ Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար», «Մեծապատիվ մուրացկաններ», Շուշան՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», ևն): Որդիները՝ **Արա Վ.** (1896–1943), դերասան, հնագետ, լուսանկարիչ: 1930–32–ին՝ Լենինականի թատրոնի դերասան: Խաղացել է կատակերգ. և բնութագր. դերեր: **Արտաշես Վ.** (1897–1987), դերասան, ռեժ., հնագետ, լուսանկարիչ: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1945): 1921–ից խաղացել է Բաթումի, Ախալցխայի հայկ., Արտաշատի և այլ թատրոններում (Պաղտասար աղբար՝ Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար», Քաղաքագլուխ՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», ևն): Մասնակցել է Ն. Մառի, Հ. Ա. Օրբելու, Ն. Մ. Տոկարսկու և ուր. գիտարշավներին որպես լուսանկարիչ: Հեղինակ է «Անիում» (1964, 1979) հուշագրության: Դուստրը՝ **Ծաղիկ Վ.** (1911–1968), դերասանուհի: ՎԽՍՀ վաստ. արտիստ (1960): 1929–68–ին՝ Թբիլիսիի պատանի հանդիսատեսի, դրամատիկ. հայկ. թատրոնների դերասանուհի (Լուիզա՝ Ֆ. Շիլլերի «Սեր և խարդավանք», Դեզդեմոնա՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», Շուշան՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», ևն):

ՎՐՈՒՅՐ Գիսակ Եղիայի (1884–1973), ջութակահար: 1923–ից՝ Լոս Անջելեսում: Նվագել է «Մետրո Գոլդուին Մայեր» կինոընկ–յան նվագախմբում, հիմնադրել դպրոց–ստուդիա: Որպես նկարիչ մասնակցել է Լոս Անջելեսի գեղ. ցուցահանդեսների:

ՎՈՒԴ (Wood) Ռոբերտ Ուիլյամս (1868–1955), ամերիկացի ֆիզիկոս–փորձարար: ԽՍՀՄ ԳԱ արտ. պատվ. անդամ (1930): Աշխ–ները վերաբերում են ֆիզ. օպտիկային: Հայտնաբերել և հետազոտել է Na–ի և Hg–ի գոլորշիների ռեզոնանս. ճառագայթումը և զարգացրել սպեկտրագրության մեթոդը, մշակել ԱՄ– և ԵԿ–լուսանկարչության հիմունքները:

ՎՈՒԴԻ ՀԱՄԱՁՈՒԼՎԱԾՔ, բիսմութի (50 %), կապարի (25 %), անագի (12,5 %) և կադմիումի (12,5 %) դյուրահալ ($t_{հալ.}$՝ 68°C) համաձուլվածք: Կիրառվում է որոշ հակահրդեհ., ազդանշան. սարքերում, ձուլման մոդելներ պատրաստելու, մետաղարան. կիպահեղկվածներ լցնելու համար: Առաջարկել է (1860) անգլիացի ճարտարագետ Բ. Վուդը (1819–1875):

ՎՈՒԴՎՈՐԴ (Woodward) Ռոբերտ Բյոռնս (1917–1979), ամերիկացի քիմիկոս-օրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1976): Իրականացրել է կենսաբանորեն ակտիվ բազմաթիվ նյութերի (քինին, կորտիզոն, քլորոֆիլ, B_{12} վիտամին) սինթեզը: Հաստատել է (1952, Ջ. *Ուիլկինսոնի* հետ) ֆեռոցենի կառուցվածքը: Ձևակերպել է կառուցվածք. քիմիայում օգտագործվող մի շարք կանոններ: Ռ. *Հոֆմանի* հետ մշակել է օրգ. միացությունների ռեակցիոնունակությունը կանխատեսող կանոն (Վ.–Հոֆմանի կանոն, 1965):

Նոբելյան (1965), Գիբսի (1967) մրց-ներ:

ՎՈՒԴՎՈՐԹ (Woodworth) Ռոբերտ (1869–1962), ամերիկացի հոգեբան: Առաջադրել է դինամիկ. հոգեբ-յան հայեցակարգ՝ դուրս մղելով *բիհեյվիորիզմի* «խթան-ազդակ» հիմն. սխեման՝ առաջարկելով նրա մեջ ներառել միջանկյալ օղակ՝ օրգանիզմը և նրա կառույցները:

ՎՈՒԼ, Բենցիոն Մոիսեևիչ (1903–1985), ռուս. ֆիզիկոս (ծագումով՝ հրեա): ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1972): Սոց. աշխ. հերոս (1969): Աշխ-ները վերաբերում են դիէլեկտրիկներին, կիսահաղորդիչներին, քվանտ. էլեկտրոնիկային: Հայտնաբերել և ուսումնասիրել է բարիումի տիտանատի սեգնետոէլ. հատկությունները: Մասնակցել է կիսահաղորդչ. լազերների մշակմանը: ԽՍՀՄ Պետ. (1946), Լենինյան (1964) մրց-ներ:

ՎՈՒԼԳԱԹԱ, (լատ.՝ Vulgata), Աստվածաշնչի լատ.՝ Հիերոնիմոս Երանելու (I դ-ի վերջ–V դ-ի սկիզբ) թարգմ-յունը:

ՎՈՒԼԿԱՆԱՅՈՒՄ, տես *Ռեպինացում*:

ՎՈՒԼԿԱՆՈ (Vulcano), կղզի Տիրենյան ծովում՝ Լիպարյան կղզեխմբում (Իտալիա): Տարածքը՝ 21,2 *կմ*^{2}: Գործող ստորջրյա հրաբխի կատարն է: Բարձր.՝ 499 *մ*:

ՎՈՒԼՈՆԳՈՆԳ (Wollongong), ք. Ավստրալիայի Նոր Հվ. Ուելս նահգ-ում: Բն.՝ 292,2 (2010):

ՎՈՒԼՖ Գեորգի (Յուրի) Վիկտորովիչ (1863–1925), ռուս. բյուրեղագետ: ՌԳԱ թղթ. անդամ (1921): Հայտնաբերել է (1903, Ու. Լ. Բրեգից անկախ) ռենտգենյան ճառագայթների դիֆրակցիայի պայմանները (Բերգ–Վ.-ի պայման):

ՎՈՒԼՖ (Woolf) Վիրջինյա (1882–1941), անգլիացի գրող, գրաքննադատ: Մոդեռնիստ. գրկ-յան ազդեցիկ դեմքերից: Հեղինակ է փորձարար. հոգեբ. «Միսիս Դելլոուեյը» (1925), «Դեպի փարոս» (1927), «Օռլանդո» (1928), «Ալիքներ» (1931) վեպերի, «Սեփական սենյակը» (1929, հայ.՝ 2016) էսսեի, որտեղ համադրել է «գիտակցության հոսքի» տեխնիկան, քնար. հատվածականությունը, իմպրեսիոնիստ. պատկերայնությունը:

ՎՈՒԼՖԻԼԱ (Wulfila, Ulfila), **Ուլֆիլա** (մոտ 311–մոտ 383), վեստգոթերի եկեղեց. գործիչ: Մոտ 341-ին Կ. Պոլսում եպիսկոպոս-արիոսականը Վ.-ին շնորհել է «գոթերի եպիսկոպոսի» աստիճան: Հետագայում քրիստոնեություն է քարոզել գերմ. ցեղերի մեջ: Վ. համարվում է գոթ. այբուբենի ստեղծողն ու Աստվածաշնչի մեծ մասի գոթերեն թարգմ-յան հեղինակը:

ՎՈՒՆԴՏ (Wundt) Վիլհելմ (1832–1920), գերմանացի հոգեբան, փիլ., ֆիզիոլոգ: Փորձարար. հոգեբ-յան հիմնադիրներից: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1902): Վ. կարևորել է կամքը, առաջադրել է «վերլուծական ներհայեցողության» հայեցակարգ: Վ. հեղինակ է «Ժողովուրդների հոգեբանությունը» (հ. 1–10, 1900–20) աշխ-յան, որն էթնոհոգեբ-յան առաջին փորձերից էր:

ՎՈՒՈԿՄԱ, գետ Ֆինլանդիայում և ՌԴ-ում: Երկ.՝ 156 *կմ*, ավազանը՝ 52,4 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 600 *մ*^{3}/*վ*: Թափվում է Լադոգա լիճ: Գործում է ջրէկ:

ՎՈՒՉԵՏԻՉ Եվգենի Վիկտորովիչ (1908–1974), ռուս. քանդ.: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1959): ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի անդամ (1953), Սոց. աշխ. հերոս (1967): Հեղինակ է Խորհրդ. բանակի մարտիկների հուշարձանի (1946–49, Բեռլինի Տրեպտով զբոսայգի), Մամաև-Կուրգանի հուշարձան-հուշահամալիրի (1963–67, համահեղ., Վոլգոգրադ), նաև դիմաքանդակների («Ի. Դ. Չեռնյախովսկի», 1945, ևն):

ԽՍՀՄ Պետ. (1946, 1947, 1948, 1949, 1950), Լենինյան (1970) մրց-ներ:

ՎՈՒՊԵՐՏԱԼ (Wuppertal), ք. Գերմանիայի Հս. Հռենոս-Վեստֆալիա երկրամասում: Բն.՝ 349,7 հզ. (2010):

ՎՈՒՐՂՈՒՆ Սամեդ (1906–1956), բանաստեղծ: Ադրբ. ԽՍՀ ժող. բանաստեղծ (1943), Ադրբ. ԽՍՀ ԳԱ ակադ. (1945): Հեղինակ է նոր կյանքի կառուցմանը և ՀՄՊ-ին նվիրված բանաստեղծ. ժող-ների, «Վագիֆ» (1937), «Ֆարհադ և Շիրին» (1941), «Մարդ» (1945) չափածո դրամաների, ժամանակակից հերոսների մասին «Մուղան» (1949), «Այգյուն» (1951), «Դարի դրոշակակիրը» (1954) և այլ պոեմների, Նիզամու, Ա. Ս. Պուշկինի, Մ. Գորկու, Ա. Իսահակյանի, Ն. Զարյանի և ուր. մասին հոդվածների: Կատարել է թարգմ-յուններ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1942):

ՎՕՊՐԱ, պրոլետ. ճարտ-ների համառուս. միություն 1929–32-ին Մոսկվայում: Հիմնադիր անդամները՝ Կարո Հալաբյան, Ա. Վ. Վլասով, Ա. Գ. Մորդվինով և ուր.: Ձգտել են ստեղծել նոր՝ կոլեկտիվ կենցաղին սպասարկող ճարտ-յուն: Հայաստանում ևս հիմնադրվել է նույնատիպ կազմ-յուն (ՕՊՐԱ, հիմնադիրներ՝ Կ. Հալաբյան, Մ. Մազմանյան, Գ. Քոչար, 1929): Անդրադարձել են նաև ազգ. ճարտ-յան զարգացման խնդիրներին:

S

S, հայ. այբուբենի 31-րդ տառը, անվանումը՝ տյուն: Ունի *գրչագիր*, *երկաթագիր*, *բոլորգիր*, *շղագիր*, *նոտրգիր* տառատեսակները: Հայ-ի առաջնալեզվային (լեզվատամնային) պայթական (հպական) խուլ բաղաձայն հնչյուն (հնչույթ) է: Թվային արժեքը՝ 4000:

S-34, Մ. Ի. *Կոշկինի* կոնստրուկցիայի խորհրդ. միջին տանկի անվանումը: Կիրառվել է ԵՀՊ-ում: Զանգվածը՝ 28,5 (32) *տ*, անձնակազմը՝ 4–5 մարդ, թնդանոթը՝ 78 (85) *մմ*, 2 գնդացիր, զրահը՝ 45–80 *մմ*, արագությունը՝ մինչև 55 *կմ/ժ*: Ճանաչվել է ԵՀՊ-ի լավագույն տանկը (1940-ից):

ՏԱԱՖՖԵ (Taaffe) Էդուարդ (1833–1895), Ավստրիայի նախարար-նախագահ՝ 1868–70 և 1879–93-ին: Եոյակ միության կազմակերպիչներից (1882):

ՏԱԲԱՆԾՂՈՒԲԻ, անհոսք լիճ Վրաստանում՝ Ջավախքի բարձրավանդակի հս-ում՝ Թրիալեթի լ-շղթայի հվ-արմ. ստորոտին՝ 1991 *մ* բարձր-յան վրա: Ունի հրաբխ. ծագում: Երկ.՝ 6,5 *կմ*, առլզն լայն.՝ 4 *կմ*, մակերեսը՝ 14,2 *կմ²*, խոր.՝ մինչև 40,2 *մ*: Կա ձկնորսություն, ունի ռեկրեացիոն մեծ հնարավորություն:

ՏԱԲԱԿՈՎ Օլեգ Պավլովիչ (ծ. 1935), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1988): 1957-ից՝ Սոսկվայի «Սովրեմեննիկ» թատրոնի, 1983-ից՝ ՄԳԱԹ-ի (1989-ից՝ Ա. Պ. Չեխովի անվ.) դերասան (2000-ից՝ գեղ. ղեկ., 2004-ից՝ նաև տնօրեն): Խաղացել է Վ. Ռոզովի «Երջանկություն որոնողները», «Սովորական պատմություն» (ըստ Ի. Ա. Գոնչարովի), Մոլիերի «Տարտյուֆ» և այլ ներկայացումներում, նկարահանվել «Աղմկոտ օր», «Ողջերն ու մեռածները», «Պատերազմ և խաղաղություն», «Գարնան տասնյոթ ակնթարթ» (հեռուստաֆիլմ), «Մի քանի օր Ի. Ի. Օբլոմովի կյանքից», «Թռիչքներ երազում և արթմնի», «Անդերսեն: Կյանքն առանց սիրո» և այլ ֆիլմերում:

ԽՍՀՄ (1967), ՌԴ (1997) Պետ. մրց-ներ, Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» շքանշան (2013):

ՏԱԲԻՉԵ Գալակտիոն Վասիլի (1892–1959), վրացի բանաստեղծ: Վրաստանի ժող. բանաստեղծ (1933): ՎԽՍՀ ԳԱ ակադ. (1944): 1922-ին հիմնադրել է «Գալակտիոն Տաբիձե» գր. ամսագիրը: Հեղինակ է «Բանաստեղծություններ» (1914), «Արտիստական բանաստեղծություններ» (1919), «Հայրենիք, իմ կյանք» (1943), «Կես դար» (1959) ժող-ների, «Ջոն Ռիդ» (1924), «Դարաշրջան» (1930), «Հեղափոխական Վրաստան» (1931) պոեմների, «Եվրոպայի ճանապարհներով» (1935–37) շարքի ևն: Հայ. լույս է տեսել Տ-ի «Կապույտ նժույգներ» (1973) ժող-ը: Ինքնասպան է եղել:

ՏԱԲԻՉԵ Տիցիան Յուստինի (1895–1937), վրացի բանաստեղծ: «Երկնագույն եղջյուրներ» (1915) սիմվոլիստ. խմբակի կազմակերպիչներից: Հեղինակ է «1918 թվական», «Ճակատներում», «Ռիոն-Պորտ» (1928) պոեմների, քնար., հայրենասիր. բանաստեղծությունների, «Վրաց նորագույն գրականությունը. 19-րդ դար» (հայ.՝ 1931) աշխ-յան, «Վրաց բանաստեղծները Հայաստանում» (1927) ակնարկի, «Հայաստանում» (1932, հրտ.՝ 1955) բանաստեղծ. շարքի: Անհիմն բռնադատվել է, գնդակահարվել:

ՏԱԲՄԵՆ (Tubman) Ուիլյամ Վականարատ Շադրակ (1895–1971), Լիբերիայի նախագահ՝ 1944–71-ին:

ՏԱԲՈՐԱ (Tabora), ք. Տանզանիայում, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 227 հզ. (2012):

ՏԱԲՈՒ (պոլինեզ.՝ արգելք), նախնադար. համայն. հաս-յան մեջ տարածված և սրբագործված արգելքների համակարգ, որոնց խախտումն իբր ենթակա է «գերբնական ուժերի» պատժին: Տաբուացվել են մարդիկ, կենդանիներ, իրեր, վայրեր, գործողություններ, բառեր ևն: Տ-ով ամրապնդվել են համայնքի անդամների իրավունքներն ու պարտականությունները, կարգավորվել թաղման կանոնները ևն:

ՏԱԲՈՒՆ, $(CH_3)_2NPO(OC_2H_5)(CN)$, ցիանֆոսֆորական թթվի երկմեթիլամիդի էթիլ եթերը: Նյարդալուծանք. ներգործության թունավոր նյութ է: Անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 230°C: Մահացու կոնցենտրացիան օդում 0,4 *մգ/լ* է՝ 1 *ր* ազդեցության դեպքում:

ՏԱԳԱՆԵՐ (ինքնանվանումը՝ տագալոգ), ժողդ ֆիլիպիններում, երկրի խոշորագույն ազգագր. խումբը: Ընդհ. թիվը՝ 21,5 մլն (2000): Լեզուն՝ տագալ.: Հավատացյալները կաթոլիկ են:

ՏԱԳԱՆՌՈԳ, ք-նվինգստ ՌԴ Ռոստովի մարզում՝ Ազովի ծովի ափին: Բն.՝ 257,6 հզ. (2009): Երկթղ. կայարան է:

ՏԱՋԱ, ք. Մարոկկոյում, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 148,4 հզ. (2014):

ՏԱԹԵՎ, **Աղանձուգետ**, գետ Սյունիքի մարզում, Որոտանի աջ վտակը: Սկիզբ է առնում Բարգուշատի լ-շղթայի Արամազդ լ-գագաթի հս. լանջից՝ 3000 *մ* բարձր-յունից: Երկ.՝ 13 *կմ*, ավազանը՝ 85 *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 1,1 *մ³/վ*: Գետահովիտը V-աձև է, Տաթևի վանքի մոտ առաջացնում է նեղ, խորը կիրճ: Մնումը ձնաանձրևային է, վարարումը՝ գարնանը: Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով:

ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Սյունյաց **վարդապետարան**, խոշորագույն ուս. հաստատություն Տաթևում: Որպես համալսարան՝ հիշատակվում է 1390-ից: Հիմնադրել է *Հովհան Որոտնեցին*՝ *Գլաձորի համալսարանի* փակվելուց հետո՝ Տաթևի կրթարան-վարդապետարանի հիմքի վրա: Ունեցել է 3 ուսումնարան՝ ներքին ու արտաքին գրոց, գրչության արվ-ի և երաժշտության: 1386–1410-ին բարունապետը *Գրիգոր Տաթևացին* էր, որը կատարելագործել է Տ. հ-ի ծրագիրը, կազմել դասագրքեր («Գիրք հարցմանց», «Գիրք քարոզութեան...», «Գիրք, որ կոչի Ոսկեփորիկ»), գրչության արվ-ի տեսությանը վերաբերող քննական մեկնություններ: Տ. հ. ունեցել է կանոնադրություն, ուսումնագիտ. աստիճանավորում: Ուսման տևողությունը՝ 7–8 տարի, պատրաստել է վրդ-ներ, քարոզիչներ, մանկավարժներ, գրիչներ, երաժիշտներ: Սաների թիվը՝ 150–300 և ավելի: Ունեցել է մտնդ. (տես *Տաթևի մատենադարան*): Գրիգոր Տաթևացու մահից հետո դադարել է ակտիվ գործունեությունը, մինչև 1425-ը դպրոցը ղեկավարել է Մխիթար բարունապետը, ապա՝ Եզեկիել վրդ-ը: Գոյատևել է մինչև 1435-ը:

ՏԱԹԵՎԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉԱԻԹ-ՅԱՆ ԴՊՐՈՑ, գործել է *Տաթևի համալսարանում* (շուրջ 50 տարի): Պահպանվել են այստեղ պատկերազարդված XIV–XV դդ-ի բացառիկ գունաշարով, մնոումննտալ լուծումներով, կիսախորաններով, գլխազարդերով ու լուսանցազարդերով, մեծ մասամբ՝ գրաֆիկ. ոճավորումով ձեռագրեր: Դպրոցում ստեղծագործել են *Գրիգոր Տաթևացին* (1378-ին ավարտել է Եղեգիսից բերված 1297-ի Ավետարանը, Մտնդ., ձեռ. № 7482), Հայրապետը (1407-ի Ավետարանը, պահպանվել է միայն հիշատակարանը, Մտնդ., պատառիկ 923, Հայսմավուրքը, ձեռ. № 7361), *Աբրահամ* ծաղկողը (1496–1502-ին պատկերազարդել է 1495-ի Ավետարանը, Մտնդ., ձեռ. № 5303):

ՏԱԹԵՎԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ստեղծվել է X դ-ում՝ Տաթևի վանքին կից: Հարստացել է Տաթևի վարդապետարանի տարիներին, իսկ *Տաթևի համալսարանի* գործունեության շրջանում առավել ճոխության հասել: 1435-ին՝ Շահռուխի արշավանքի ժամանակ, կողոպտվել է: Տ. մ. գոյատևել է մինչև 1911–12-ը, 140 ձեռագիր փոխադրվել է Էջմիածին (այժմ՝ Մտնդ-ում):

ՏԱԹԵՎԻ ՄԵԾ ԱՆԱՊԱՏ, XVII դ-ի ճարտ. համալիր, ՀՀ Սյունիքի մարզի Տաթև գ-ից հվ-արլ.՝ Որոտան գետի ափին:

Միակ՝ Սբ Աստվածածին (1663) եկեղեցին եռանավ բազիլիկ է, որին կից են գմբեթավոր մատուռ-դամբարանը (թաղված է անապատի հիմնադիր վանահայր Արիստակեսը), սեղանատունը, խցերը, բնակելի սենյակները:

ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔ, IV դ–ի ճարտ. համալիր ՀՀ Սյունիքի մարզի Տաթև գ–ում՝ Որոտանի բարձրադիր հարթավայրում: Գլխ.՝ Սբ Պողոս–Պետրոս տաճարը կառուցվել է 895–906–ին: Բարձր հովանոցաձև վեղարով գմբեթը (վերականգնվել է 1970–90–ական թթ–ին) նստած է արմ. ավանդատների պատերի և 1 զույգ հզոր մույթերի վրա, ներսը հարուստ է որմնանկարներով: 906–ին կառուցվել է ճոճվող «Գավազան» հուշասյունը, 1043–ին՝ կամարակապ սրահը (քանդվել է 1931–ին), 1087–ին (իբրև տաճարի II հարկ)՝ Սբ Աստվածածին, 1295–ին՝ Սբ Գրիգոր եկեղեցիները: Ուշ միջնադարում հավելել են գավիթն ու զանգակատունը (քանդվել են XIX դ–ի վերջին, կանգնեցվել է բարձր եռաստիճան զանգակատուն): 1787–ին կառուցվել է Գրիգոր Տաթևացու դամբարանը: 1974–98–ին վերակառուցվել են Սբ Գրիգոր Լուսավորիչ և Սբ Աստվածածին եկեղեցիները, տաճարի գմբեթը, զանգակատունը ևն:

ՏԱԹԵՎԻ ՓԻԼԻՍՓԱՅԱԿԱՆ ԴՊՐՈՑ, Տաթևի համալսարանում XIV դ–ի վերջին և XV դ–ի 1–ին քառորդում ձևավորված փիլ. դպրոց, որի խոշորագույն ներկայացուցիչներից էին Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Առաքել Սյունեցին, Մատթեոս Ջուղայեցին: Դպրոցի փիլ–յունը միջնադար. հայ իմաստասիրության գագաթնակետն է: Հիմնականում պաշտպանել են չափավոր ռեալիստ. և կոնցեպտուալիստ. տեսակետ: Ընդհանուրի նկատմամբ առանձինի գոյաբան. առաջնայնության դրույթն օգտագործել են կրոնադավանաբան. պայքարում՝ հիմնավորելու համար հայոց եկեղեցու առավելությունը և գերազանցությունը «ընդհանուր եկեղեցու» (Հռոմի կաթոլիկ եկեղեցու)նկատմամբ: Տ. փ. դ–ի հարուստ ժառանգությունը մեծ ազդեցություն է ունեցել հետագա, հատկապես՝ XVII–XVIII դդ–ի հայ փիլ. մտքի զարգացման վրա:

ՏԱԹԵՎՅԱՆ Արշավիր Շավարշի (1909–1972), գեոդեզիստ: Տեխ. գիտ. դ–ր (1968): Գրիգոր ***Տաթևյանի*** եղբայրը: Աշխ–ները վերաբերում են բարձրագույն գեոդեզիայի աստղագիտ–գեոդեզ. ցանցի գնահատման հարցերին: Տ–ի գեոդեզ. հենարան. ցանցի կառուցման մասին հետազոտությունները կարևոր դեր են ունեցել ԽՍՀՄ–ում գեոդեզ. հիմն. աշխ–ների կազմավորման գործում:

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան:

ՏԱԹԵՎՅԱՆ Գրիգոր Շավարշի (1912–1977), գեն–մայոր, ճարտարագետ (1967): Տեխ. գիտ. թեկնածու (1950): Արշավիր ***Տաթևյանի*** եղբայրը: 1941–ից՝ ծառայել ԽՍՀՄ ՌՕՈՒ–ում: 1961–ից՝ զինամթերքի վարչության պետ, 6–րդ վարչության պետի տեղակալ: Աշխ–ները վերաբերում են զինամթերքի նոր տեսակների ստեղծմանը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1971), Կարմիր դրոշի, ՀՄՊ 2–րդ աստիճանի, Կարմիր աստղի (2), «Պատվո նշան» շքանշաններ:

ՏԱԼ Միխայիլ Նեհեմևիչ (1936–1992), շախմատի աշխարհի 8–րդ չեմպիոնը (1960–61): Միջազգ. գրոսմայստեր (1957): ԽՍՀՄ ս. վ. վ. (1960): ԽՍՀՄ 6–ակի չեմպիոն (1957–78):

ՏԱԼԱԼԻԽԻՆ Վիկտոր Վասիլևիչ (1918–1941), ռուս. օդաչու, կրտսեր լեյտ. (1938): ԽՄ հերոս (1941): Մոսկվայի մատույցներում 1941–ի օգոստ. 7–ին առաջին անգամ գիշեր. մարտում խոչահարել է թշնամու ռմբակոծիչը, որի համար արժանացել է հերոսի կոչման: Զոհվել է օդ. մարտում:

ՏԱԼԱՆՈՎ Վլադիմիր Իլյիչ (ծ. 1933), ռուս. ֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (1992): Աշխ–ները վերաբերում են էլեկտրադինամիկայի, քվանտ. ռադիոֆիզիկայի, ոչ գծային, մթն. օպտիկայի, օվկ–ի հիդրոդինամիկայի հարցերին: Լենինյան մրց. (1988):

ՏԱԼԵՎ Դիմիտր (1898–1966), բուլղար գրող: Հեղինակ է Մակեդոնիայում XIX դ–ի և XX դ–ի սկզբի ազգ–ազատագր. շարժման մասին «Երկաթե կանթեղ» (1952), «Իլյայի օրը» (1953), «Պրեսպանյան կոչնակներ» (1954, հայ.՝ 1986), «Լսում եմ ձեր ձայները» (1966) վիպաշարի, «Սամուիլ» (մաս 1–3, 1958–60) պատմավեպի ևն:

ՏԱԼԻԵՆ, ***Թալիեն*** (Tallien), Ժան Լամբեր (1767–1820), Ֆրանսիայի Կոնվենտի անդամ՝ 1792–ից, յակոբինյան: 1794–ի Թերմիդորյան հեղ–յան գլխ. ղեկ–ներից: 1795–ին ճնշել է Պրերիալի ժող. ապստամբությունը:

ՏԱԼԻՋԻՆԱ Վալենտինա Իլյարիոնովնա (ծ. 1935), ռուս. դերասանուհի: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1985): 1958–ից՝ Մոսկվայի Մոսսովետի անվ. թատրոնի դերասանուհի (Կատերինա Իվանովնա՝ «Պետերբուրգյան երազներ»՝ ըստ Ֆ. Մ. Դոստոևսկու, Գրանյա՝ Լ. Ս. Պետրուշևսկու «Երաժշտության դասեր», Աննա Ֆիոլինգ՝ Բ. Բրեխտի «Կուրաժ մայրիկը և նրա երեխաները»): Նկարահանվել է «Հաջողության կեռման», «Աֆոնյա», «Պետերբուրգյան գաղտնիքներ» (հեռուստաֆիլմ) և այլ կինոնկարներում:

ՏԱԼԻՈՆ [լատ.՝ talio (talionis) – հանցագործությանը համարժեք հատուցում], հատուցման սկզբունքով («ակն ընդ ական, ատամն ընդ ատաման») պատիժ, ըստ որի՝ հանցավորին հասցվում է այն վնասը, ինչ նա պատճառել է տուժողին: Առավել ցայտուն արտահայտվել է ***Համմուրաբիի*** օրենքներում, հինհրեական իրավունքում:

ՏԱԼԻՈՆԻՆԵՐ (Taglioni), բալետի իտալացի արտիստների, բալետմայստերների, պարուսույցների ընտանիք: 1. **Ֆիլիպպո S.** (1777–1871), բալետի բարեփոխիչ: Բեմադրել է Ա. Ադանի «Դանուբի կույսը» (1836), «Ծովահեն» (1840) և այլ բալետներ: 2. Դուստրը՝ **Մարիա S.** (1804–1884), 1828–ից՝ Փարիզի օպերայի առաջատար պարուհի: Որպես գեղ. արտահայտչամիջոց կիրառել է մատների վրա կանգնած պարելու դիրքը (պուանտ): 3. Որդին՝ **Պոլ** (Պաոլո) **S.** (1808–1884), հանդես է եկել (հիմնականում քրոջ՝ Մարիա S–ի հետ) Եվրոպայի երկրներում, բալետներ բեմադրել Լոնդոնում, Միլանում: 1856–83–ին՝ Բեռլինի օպերայի բալետմայստեր:

ՏԱԼԼԻՆ (Tallinn), Էստոնիայի մայրաքաղաքը (1918–ից), նվինգստ Բալթիկ ծովի ափին: Բն.՝ 393 հզ. (2010): Կան մեքենաշին. և մետաղամշակման, քիմ., թեթև, սննդի արդ–յան և այլ ձեռն–ներ: Գործում են թատրոններ (օպերայի և բալետի «Էստոնիա» ևն), թանգարաններ (պատմ., գեղարվ–ի, ծով. ևն) ու բուհեր: Առաջին անգամ հիշատակվել է 1154–ին: Ճարտ. հուշարձաններից նշանավոր են դղյակը (XIII–XVI դդ.), Դոմյան տաճարը (XIII–XV դդ.), Ռատուշայի հրապարակի համալիրը [հիմն. շին–յունը՝ 1402–04, դեղատունը (XV–XVII դդ.)], Նիգուլիստե (XIII–XV դդ.), Պյուխավայմու (Սբ Հոգի, XIV դ.), Օլեվիստե (XV դ.–XVI դ–ի սկիզբ) գոթ. եկեղեցիները, Սևագլուխների եղբայրության տունը (ճակատը՝ 1597), XV–XVI դդ–ի բնակելի տներ ևն:

ՏԱԼԿ, շերտավոր սիլիկատների ենթադասի միներալ՝ $Mg_3[Si_4O_{10}](OH)_2$: Անգույն կամ տարբեր երանգներով բյուրեղներ են: Փայլը՝ սադափի: Կարծր.՝ 1, խտ.՝ 2,6–2,8 $գ/սմ^3$: Ծագումը՝ ջրաջերմ.: Կիրառվում է ռետինի, թղթի, օծանելիքի, կոսմետիկայի արտադր–յան մեջ:

ՏԱԼՄՈՒԴ Դավիդ Լվովիչ (1900–1973), ռուս. ֆիզքիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1934): Աշխ–ները վերաբերում են մակերևութ. երևույթներին և կոլոիդային քիմիային: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943):

ՏԱԼՅԱՆ Շարա Մկրտչի (1893–1965), երգիչ (տենոր, բարիտոն), թատեր. գործիչ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1939): ***Ջամալու*** որդին, Մարիաննա ***Մելմարի*** ամուսինը: ԵՕԲԹ–ի և ԵԵԿԹ–ի հիմնադիրներից, Լենինականի օպերա–օպերետ. խմբի (1924), Երևանում՝ «Հայ աշուղներ» անսամբլի (1927), Սայաթ–Նովայի անվ. հայկ. գուսան. երգի անսամբլի (1938) հիմնադիր–ղեկ.: Երգացանկում՝ աշուղ., կոմպոզիտոր., գեղջ. և քաղաք. ժող. երգեր, միջնադար. տաղեր: 1933–54–ին՝ ԵՕԲԹ–ի մեներգիչ (Սարո՝ Ա. Տիգրանյանի «Անուշ», առաջին կատարողը, Արշակ՝ Տ. Չուխաճյանի «Արշակ Բ», Ֆաուստ՝ Շ. Գունոյի «Ֆաուստ», ևն): Մուշեղ ***Աղայանի*** հետ գրառել է, կազմել ու խմբագրել (1946, 1963) Սայաթ–Նովայի, հավաքել ու կազմել (1955) ***Ջիվանու*** երգերի առաջին նոտ. ժող–ները: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946):

ՏԱԼՅԱՆ Վազգեն Գրիգորի (1907–1995), բանաստեղծ, թարգմանիչ: ***Շերամի*** որդին, Վարդգես ***Տալյանի*** եղբայրը: Հեղինակ է «Սոնիկի թռիչքը» (1939), «Մոնրիմներ» (1959), «Վերադարձ» (1960), «Անհանգիստ հոգիներ» (1969), «Աստղիկներ» (1974), «Առավոտից իրիկուն» (1980), «Փիղ, փիղ, փիղ» (1982), «Մինչև լուսաբաց» (1987), «Հսկաների հանդես» (1990) և այլ մանկ. բանաստեղծությունների, առակների, պատմվածքների ժող–ների, «Շերամ» (1986) վեպ–վավերապատումի: Կազմել և խմբագրել է Շերամի «Երգեր» (1969) ժող–ը, կատարել է թարգմ–յուններ:

ՏԱԼՅԱՆ Վարդգես Գրիգորի (1896–1947), կոմպոզիտոր, մանկավարժ, հաս. գործիչ: ***Շերամի*** որդին, Վազգեն ***Տալյանի*** եղբայրը: Ազգ. երաժշտության հիմքով կոմպոզիցիայի դասավանդման դպրոցի հիմնադիրը: Սաներից են Առնո Բաբաջանյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Էդվարդ Միրզոյանը, Ղազարոս Սարյանը, Արամ Մերանգուլյանը, Ռոբերտ Աթայանը, Ադամ Խուդոյանը և ուր.: Հեղինակ է ռոմանսների, խմբերգերի, կամեր–գործիք. երկերի, ժող. և աշուղ. երգերի մշակումների:

ՏԱԼՎՈՐԻԿ, **Դալվորիկ, Տալվորի, Քարակ**, համանուն կենտրոնով գվոզկ, Բիթլիսի վիլայեթի Սասուն գվո–ում՝ Շատախ (հնում՝ Ասպական) գետի գոգհովտում: XX դ–ի սկզբին ուներ 250–300 տուն բնակիչ: 1915–ին՝ Մեծ եղեռնի ժամանակ, դիմել են ինքնապաշտպ–յան (500 զինվոր) և թշնամու գերակշռող ուժերի դեմ կատաղի մարտերից հետո թողել հայրենի գվոզկ–ը: Ներկայում տալվորիկցիների սերունդ–

նները բնակվում են ՀՀ Արագածոտնի մարզի Աշնակ, Ծաղրշիկ, Իրինդ, Ավան, Սասունիկ, Լեռնարոտ գ–երում: Քաջ տալվորիկցիների մասին երգեր են հյուսվել:

ՏԱԼՐՈՋԵ Վիկտոր Լվովիչ (1922–2004), ռուս. ֆիզքիմիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1968): Աշխ–ները վերաբերում են քիմ. ռեակցիաների կինետիկային և քիմիայում ֆիզ. եղանակների կիրառությանը: Լենինյան մրց. (1984):

ՏԱԽԻՆՆԵՐ, *ոզնաճանճեր*, երկթևանիների կարգի միջատների ընտանիք: Երկ՝ 2–20 *մմ*: Մարմինը ծածկված է ցցամազերով (այստեղից՝ 2–րդ անվանումը): Հայտնի է ավելի քան 5 հզ. տեսակ, որոնց մեծ մասի թրթուրները միջատների և հող. անողնաշարների ներքին մակաբույծներ են:

ՏԱԽԻՈՆՆԵՐ (հուն.՝ tachýs – արագ), վարկած. մասնիկներ, որոնք վակուումում շարժվում են լույսի արագությունը գերազանցող արագությամբ: Տ–ի գոյությունը ձևականորեն չի հակասում ***հարաբերականության տեսությանը***, բայց դժվարություններ է հարուցում պատճառականության սկզբունքի իրականացման համար: Փորձնականորեն Տ. չեն հայտնաբերվել:

ՏԱԽՈ, *Տեժու,* (իսպ.՝ Tajo, պորտուգ.՝ Tejo), գետ Իսպանիայում և Պորտուգալիայում: Երկ.՝ 1010 *կմ*, ավազանը՝ 81 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝438 *մ³/վ*: Գործում է ջրէկ: Ստորին հոսանքում նավարկելի է: Գետաբերանում է Լիսաբոն ք–ը:

ՏԱԽՈՄԵՏՐ (< հուն. tachos – արագություն և ...*մետր*), ***պտուտաչափ***, մեքենաների և մեխանիզմների մեքենամասերի պտտման հաճախության չափման սարք: Ցուցմունքների ավտոմատ գրանցումով Տ. կոչվում է ***տախոգրաֆ***:

ՏԱԿԱԻՇՎԻԼԻ Սեսիլիա Դմիտրիի (1906–1984), վրացի դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1966): 1925–ից՝ Թիֆլիսի Շ. Ռուսթավելու անվ., 1930–67–ին՝ Կ. Ա. Մարջանիշվիլու անվ. վրաց. թատրոնների դերասանուհի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1985, հետմահու):

ՏԱԿԱՀԱՍԻ ԿՈՐԵԿԻՅՈ (1854–1936), ճապոնիայի վարչապետ՝ 1921–22–ին: 1913–14, 1918–21, 1927, 1931–36–ին՝ ֆինանսների նախարար: Սեյյուկայ կուս–յան առաջնորդ՝ 1921–25–ին: Սպանվել է:

ՏԱԿԻՆ (Budorcas taxicolor), սնամեջ եղջերավորների ընտանիքի կաթնասուն. նույնանուն սեռի միակ ներկայացուցիչը: Մարմնի երկ.՝ մինչև 2,2 *մ*, կ. զ.՝ մինչև 350 *կգ*: Եղջյուրներ (երկ.՝ մինչև 50 *սմ*) ունեն և՛ արուները, և՛ էգերը: 2 ենթատեսակ գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՏԱԿԻՏՈՍ Պուբլիոս Կոռնելիոս (Publius Cornelius Tacitus, մոտ 58–117–ից հետո), հռոմեացի պատմագիր, գրող: Տ–ին համաշխ. փառք են բերել նրա «Պատմություն» և «Աննալներ» երկերը, որտեղ կարևոր տեղեկություններ կան նաև Հայաստանում հռոմ. դրածո թագավորների, *Տրդատ Ա*–ի գահակալման, 54–63–ի հռոմա–պարթևա–հայկ. տասնամյա պատերազմի ևնի վերաբերյալ:

ՏԱԿԼԱ ՄԱԿԱՆ (հին ույղուրերեն՝ կզնաս, հետ չես դառնա), անապատ Չինաստանի արմ–ում՝ Թարիմ գետի ավազանում: Աշխարհի խոշորագույն ավազ. անապատներից է: Երկ.՝ 1000 *կմ*, լայն.՝ մինչև 400 *կմ*: Մակերևույթը հարթավայրային է, բարձր.՝ 800–1300 *մ*: Ծայրամասերում կան օազիսներ:

ՏԱՂ, 1. չափածո ստեղծագործություն, ***բանաստեղծություն*** հայ միջնադար. քնարերգության մեջ (Գրիգոր Նարեկացի, Ֆրիկ, Կոստանդին Երզնկացի, Գրիգորիս Աղթամարցի, Մկրտիչ Նաղաշ և ուր.): Ունեցել են կրոն. և աշխարհիկ բովանդակություն, գրել են բնության, սիրո, վայելքի, ազգ., սոցիալ., պանդխտության, հայրենասիրության թեմաներով Տ–եր: Ժանր. առումով Տ–երը գովեստ են, ողբ, պարսավանք, խրատ, գանգատ ևն: Ազգ. բանաստեղծ. ավանդույթները շարունակելու և ոճավորելու նպատակով իրենց բանաստեղծությունները տաղեր են անվանել Խ. Աբովյանը, Պ. Դուրյանը, Մ. Պեշիկթաշլյանը, Մ. Մեծարենցը, Վ. Թեքեյանը, Ե. Չարենցը, Գ. Սարյանը և ուր.: 2. Երաժշտության մեջ՝ հնագույն ծագման եղանակավոր երգ, հայ պրոֆեսիոնալ մոնոդիկ երգաստեղծության ինքնատիպ ժանր: Տարբերում են հոգևոր (ներդիր հատվածներ արարողության մեջ) և աշխարհիկ Տ–եր: Որպես ժանր՝ ծաղկել է X դ–ում՝ Գրիգոր Նարեկացու ժամանակաշրջանում: Ուշագրավ են Ն. Թաշճյանի, հատկապես՝ Կոմիտասի («Հաւուն–հաւուն», «Սայլն այն իջանէր», «Ես ձայն առիւծուն ասեմ» ևն) գրառումները:

ՏԱՂԱԼՈՒ, *թաղալու, թաղալո*, հայկ. ժող. պարերգի տեսակ: Հիմնականում քնար. բովանդակության քառյակներ են՝ հարց ու պատասխանի ձևով (1 կամ 2 աղջիկ հարցնում են, 2 տղա պատասխանում): Տ–ները կատարվում են միայն պարզ պարաձևերի՝ ***գյոնդերի*** հետ:

ՏԱՂԱՆԴ (հուն.՝ talantos – կշեռք), 1. գործունեության որոշակի կամ մի շարք ձևերում օժտվածության և ընդունակությունների բարձր մակարդակ, որն արտահայտվում է անձի արդյունավետ և եզակի գործերում: 2. Ծանրության չափ և դրամ. միավոր Հին Հունաստանում, Առաջավոր և Կենտր. Ասիայում: Ծագել է Միջագետքում, որտեղ Տ. բաժանվել է 60 մնասի (6000 դրահմ): Տարբեր երկրներում ունեցել է տարբեր անվան. զանգված (*կգ*՝ աթենյան կամ հուն.՝ 26 *կգ*, հռոմ.՝ 32,2, եգիպտ.՝ 27, բաբելոնյան՝ 30,3 *կգ*: Տ. եղել է Արտաշեսյան և Արշակունյան թագավորությունների պետ. արժույթը (≈30 *կգ*):

ՏԱՂԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ, 1. բանաստեղծության ձևական կառուցվածքի բաղադրամասերի ամբողջություն, որով ստեղծվում է ներդաշնակության օրենքներով համադրված լեզվի մի առանձնահատուկ տեսակ՝ չափածո գեղ. խոսքը: Տաղաչափության տարրերն են չափը, հանգը, բանաստեղծ. ինչյունաբանությունը, տունը, ոտքը, տողը, կիսատողը, դադարը, տողանցումը ևն, որոնք ստեղծում են խոսքի կշռույթը՝ ***ռիթմը***: Հայերենի Տ. պատկանում է վանկային համակարգին, հանդիպում են նաև վանկաշեշտային ոտանավորների օրինակներ: Կան նաև համաշեշտ և ազատ ոտանավորի տեսակներ: 2. Գրականագիտ–յան բնագավառ՝ ***տաղաչափագիտություն***. ուսումնասիրում է չափածո խոսքի՝ որպես լեզվի առանձնահատուկ համակարգի, ձևական կառուցվածքի տարրերը: Ունի 4 հիմն. բաժիններ՝ չափագիտ–յուն, հանգագիտ–յուն, բանաստեղծ. տների կառուցման տեսություն և տեսության բանաստեղծ. կայուն ձևերի (հայրեն, սոնետ, տրիոլետ, ռոնդո, գազել ևն) մասին:

ՏԱՂԱՎԱՐ ՏՈՂԵՐ, 5 Տերունի տոների (Աստվածահայտնություն, Հարություն, Այլակերպություն, Վերափոխում, Խաչվերաց) անվանումը ՀԱԵ օրացույցում: Տերուն. տոների ժամանակ տաղավարներում (վրան) կազմակերպվել են տոնավաճառ–հանդեսներ և տոնախմբություններ (այստեղից՝ անվանումը):

ՏԱՂԱՎԱՐԱՅԻՆ ԹՌՉՈՒՆՆԵՐ, *հյուղակային թռչուններ*, ճնճղուկանմանների կարգի թռչունների ընտանիք: Հայտնի է 17 տեսակ: Կտղուցող արուները զուգավորման համար ճյուղերից տաղավար (կտղուցատեղ) են կառուցում, առջևի հրապարակը զարդարում խեցիներով, ծաղիկներով ևն:

ՏԱՂԱՎԱՐՅԱՆ (Չատրճյան) Նազարեթ Նահապետի (1862–1915), հաս. գործիչ, բնագետ, բժիշկ: Բժշկագիտ. դ–ր (1893), Ֆրանսիայի աստղագիտ. ընկ–յան պատվ. անդամ (1904): 1893–ին՝ Կ. Պոլսի Սբ Փրկիչ ազգ. հիվանդանոցի տնօրեն: Աբդուլհամիդ. բռնատիրության տարիներին (1896, 1900) բանտարկվել է: Օսմ. սահմանադրության հռչակումից (1908) հետո ընտրվել է օսմ. խորհրդարանի երեսփոխան: Մեծ եղեռնի զոհ:

ՏԱՂԱՐԱՆ, սկզբն. շրջանում՝ միայն հոգևոր (***Գանձարան***, ***Շարակնոց***), հետագայում՝ նաև աշխարհիկ բովանդակություն ունեցող չափածո ստեղծագործությունների՝ ***տաղերի*** ժող.՝ ձեռագիր մատյան կամ տպագիր գիրք: Հայ. հնագույն ձեռագիր Տ–ներ չեն պահպանվել: Առաջին Տ. հրատարակել է ***Հակոբ Մեղապարտը*** 1513–ին: Աշխարհիկ բովանդակությամբ մեզ հասած հնագույն Տ. կազմել է Խաչատուր Կաֆայեցին 1620–58–ին Ղրիմում (Մտնդ., ձեռ. № 7709):

«ՏԱՂԱՐԱՆ», հնագույն երաժշտության անսամբլ Երևանում: Հիմնադիր–գեղ. ղեկ.՝ Դանիել Երաժիշտ (1981–84), 1987–95–ին գեղ. ղեկ.՝ Երվանդ Երկանյան, 1995–ից՝ Մեդրակ Երկանյան: Մինչև 1985–ը՝ «Շարական», 1988–ից՝ պետ.: Համերգացանկում՝ հայկ. միջնադար. մեղեդիներ, շարականներ, հոգևոր և աշխարհիկ երգեր, արևմտաեվրոպացի կոմպոզիտորների երկեր, նեգր. մեղեդիների մշակումներ և գործիքավորում:

ՏԱՃԱՏ ԱՆԶԵՎԱՑԻ (ծ. թ. անհտ–785), Հայոց իշխան՝ 781–ից: ***Մամիկոնյանների*** նախարար. տոհմից՝ իշխան Գրիգորի որդին: Ծառայել է բյուզ. բանակում: 778–ի արաբա–բյուզ. պատերազմի ժամանակ Տ. Ա. արաբներին պարտության է մատնել Գերմանիկե (Մարաշ) ք–ի մոտ տեղի ունեցած ճակատամարտում: Լևոն IV (775–780) կայսեր մահից հետո վերադարձել է հայրենիք և կարգվել Հայոց իշխան: 785–ին, արաբ. զորքերի կազմում, խազարների դեմ կռվում գլխավորել է հայկ. այրուձին:

ՏԱՃԱՐ (հին պարսկ.՝ tacara – պալատ, ապարանք), կրոն. ծեսերի և արարողությունների համար նախատեսված ծառայող պաշտամունք. շինություն, անտիկ շրջանում՝ հեթանոս. աստվածների տուն, կոստուն: Տ. եղել է նաև հաս. ժողովների, հանդիսությունների անցկացման վայր: Տ–ային առաջին շինությունները կառուցվել են Հին Եգիպտոսում, Միջագետքում, Հայկ. լ–աշխարհում: Հայաստանում հնագույններից են Սուսիի և Խալդիի Տ–ները (մ. թ. ա. XIII դ.) Էրեբունի ամրոցի տարածքում: Տ–ների շին–յունը Հայաստանում ծաղկել է մ. թ. ա. III–I դդ–ում (Գառնիի հեթանոս. Տ., I դ.):

«ՏԱՃԱՐ», կրոնաեկեղեց., ազգ., գր., քաղ. պարբ. (1909–18, Կ. Պոլիս): Խմբ.՝ Գարե–

գին *Խաչատրյան*, ապա՝ տնօրեն-խմբ.՝ Զարմայր Կեզյուրյան: Ունեցել է թուրք. հավելված: 1924–39-ին, որպես «S.»-ի շարունակություն, լույս է տեսել *«Հայ խօսնակ»* կրոնաբարոյական և գր. ամսաթերթը:

ՏԱՃԱՐԱԲԱԿ, հնագիտ. հուշարձան միջնադար. Հայաստանում՝ Տաճարաբակ (այժմ՝ ՀՀ Կոտայքի մարզի Զորաղբյուր գ.) բնակավայրում: S-ում բացվել է բրոնզի դարի (մ. թ. ա. II հզ-ամյակ) դամբարանադաշտ, դամբարան-քարարկղերում հայտնաբերվել են դաշույններ, ճարմանդներ, խեցանոթներ: Պեղվել է նաև բնակատեղի, որտեղ ապրել են մ. թ. ա. V դ-ից մինչև ուշ միջնադար:

ՏԱՄԱ, սեղանի հայկ. ժող. խաղ: Խաղում են երկուսով՝ երկգույն, 64-վանդականոց խաղատախտակի վրա՝ 10-ական քարով: «Քարը» շարժվում է ազատ վանդակներով 1 քայլ առաջ կամ կողմ: Հաղթում է մրցակցի բոլոր «քարերը» վերցնող խաղացողը:

ՏԱՄԱՅ Ժորժ (Տամադյան Հակոբ, 1839–1920), նկարիչ: Ստեղծել է ծով. («Ծովը առագաստանավով», «Ծովածոցը» ևն), Լեման լճի տեսարաններով գործեր:

ՏԱՄԱՅՈ (Tamayo) Ռուֆինո (1899–1991), մեքսիկացի նկարիչ: Կիսաաբստրակտ նկարներում և որմնանկարներում հասել է դեկորատիվ տպավորության, ռիթմիկ արտահայտչության (ՅՈՒՆԵՍԿՕ-ի շենքի որմնանկարները, 1958, Փարիզ):

ՏԱՄԱՅՈ-ՄԵՆԴԵՍ (Tamayo-Méndes) Առնալդո (ծ. 1942), կուբացի 1-ին տիեզերագնաց օդաչուն: Գնդ. (1980): Կուբայի և ԽՄ (1980) հերոս: 1980-ի սեպտ. 19-ին Յ. Վ. *Ռոմանենկոյի* հետ թռել է «Սոյուզ-38» տիեզերանավով, որը կցվել է «Սալյուտ-6»-«Սոյուզ-37» ուղեծր. համալիրին:

ՏԱՄԱՆՅՈ (Tamagno) Ֆրանչեսկո (1850–1905), իտալացի երգիչ (դրամատիկ. տենոր): 1870-ից՝ Եվրոպայի օպեր. թատրոնների մենակատար, ճանաչվել է Ջ. Վերդիի օպեր. դերերգերով (Օթելլո՝ «Օթելլո», առաջին դերակատար, ևն):

ՏԱՄԱՆՅԱՆ Միհրան (1863–1945), հասքաղ. գործիչ: 1912-ին ընդգրկվել է *Պողոս Նուբարի* գլխավորած Ազգ. պատվիրակության կազմում: 1920-ի օգոստ. 4-ին Ադանայում Ազգ. ԴԽ-ը S-ի նախաձեռնությամբ հռչակել է Ինքնավար Հայաստան՝ Ֆրանսիայի հովանավորության ներքո, կազմել կառ-յուն (1 օր եղել է վարչապետ): Սակայն անգլո-ֆրանս. հակասությունների սրման պայմաններում Ֆրանսիայի թրքամետ զինվ. իշխանությունները ցրել են S-ի կառ-յունը:

ՏԱՄԱՆՅԱՆ Շիկ (Խաչիկ) Արամի (1919–1985), նկարիչ: Ստեղծել է ծաղրանկարներ, շարժեր, դիմանկարներ, բնանկարներ, նկարազարդել գրքեր (Հ. Պարոնյանի հատընտիրը, Արա Բեքարյանի հետ, ռուս., 1965), ձևավորել ներկայացումներ: Հեղինակ է «Բուկերեշչի» (1978) գրքի, «Հակաիմպերիալիստական ծաղրանկարներ» (1960), «Բազմալեզու կատակերգություն» (1976, նաև գերմ.) ծաղրանկարների ալբոմների: Ռումինիայի Պետ. (1950, 1952) և միջազգ. մրց-ներ:

ՏԱՄԲԵՐ, **Տանբեր**, գվո Պարսկահայք նահանգ-ում: Սահմանակից է եղել Վասպուրականի Գազրիկյան, Կորճայքի Փոքր Աղբակ և Որսիրանք, Պարսկահայքի Զարեհավան և Այլի գվո-ներին: S-ի արլ. հատվածը երիզվել է Կապուտան (Ուրմիա) լճով: Կենտրոնը՝ Տամբեր գք-ն (այժմ՝ գ. Տեմեր): Հայաստանի 387-ի բաժանումից հետո միացվել է Պարսկաստանին:

ՏԱՄԲԵՐԳ (Tamberg) Էյնո (1930–2010), էստոնացի կոմպոզիտոր: Էստ. ԽՍՀ ժող. արտիստ (1975): Հեղինակ է օպերաների («Սիրանո դը Բերժըրակ», 1974, ևն), բալետների, սիմֆոնիաների (1978, 1986), «Լուսնային օրատորիայի» (1962), գործիք. երկերի («Սիմֆոնիկ պարեր», «Կոնչերտո գրոսսո»), երգերի, կինոերաժշտության և այլ գործերի:

Էստ. ԽՍՀ Պետ. մրց. (1967, 1987):

ՏԱՄԲԻԵՎ (Տամբյան) Վլադիմիր Գրիգորի (1914–1981), սերժանտ: ԽՄ հերոս (1944): ՀՄՊ-ի ժամանակ եղել է Հվ-արմ. ռազմաճակատի 152-րդ հրաձգ. դիվիզիայի, հետախուզ. ջոկի հրամ.: Հերոսի կոչման արժանացել է Դնեպրոպետրովսկի (Ուկրաինա) շրջանում առաջինների շարքում Դնեպրը գետանցելու և գրաված հենակետը պաշտպանելու համար:

ՏԱՄԲՈՎ, ք. ՌԴ-ում, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 278,6 հզ. (2009): Երկթղ. հանգույց է:

ՏԱՄԲՈՎԻ ՄԱՐԶ, վտմ ՌԴ կենտր. դաշն. օկրուգում: Տարածքը՝ 34,5 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,1 մլն (2013): Ունի 23 շրջան, 8 քաղաք և 12 քտա: Վարչ. կենտրոնը՝ *Տամբով*: Կազմավորվել է 1937-ին:

ՏԱՄԲՈՒՐԻՆ (ֆրանս.՝ tambourin), **թամբուր**, 1. հարված. երաժշտ. գործիք, գլանաձև ոչ մեծ թմբուկ: 2. Պրովանս. պար՝ ֆլեյտայի և S-ի նվագակցությամբ (որտեղից էլ՝ անվանումը): Չափը՝ 2/2 և 2/4: 3. Գրկ-յան մեջ S. են անվանում նաև դափը:

ՏԱՄԲՈՒՐԻՆԻ (Tamburini) Անտոնիո (1800–1876), իտալացի երգիչ (դրամատիկ. բարիտոն): 1818–55-ին (1843–52-ին՝ Ռուսաստանում) երգել է Իտալիայի և այլ երկրների օպեր. թատրոններում, ճանաչվել Դոն Ժուանի (Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան») դերերգով: S-ի համար են գրել Վալդերբուրգի, Ռիչարդ Ֆորտի (Վ. Բելլինիի «Օտարերկրուհին», «Պուրիտանները»), Մալատեստայի (Գ. Դոնիցետտիի «Դոն Պասկուալե») դերերգերը:

ՏԱՄԻՄ Բին Համիդ ալ-Թանի (ծ. 1980), Քաթարի էմիրը՝ 2013-ից: Համադ Բին Խալիֆա ալ-Թանի (1932–2016, էմիր՝ 1972–95-ին, վարչապետ՝ 1970–95-ին) որդին: Ծոցի երկրների համագործակցության ամենաերիտասարդ նախագահը:

ՏԱՄՄ Իգոր Եվգենևիչ (1895–1971), ռուս. ֆիզիկոս-տեսաբան: Գիտ. դպրոցի հիմնադիր: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1953): Սոց. աշխ. հերոս (1953): Ցրման քվանտ. տեսության հեղինակ, լուսաէֆեկտի, քվանտի միջուկ. ուժերի, *Վավիլով-Չերենկովի ճառագայթման* տեսությունների հեղինակներից: 1950-ին առաջարկել է (Ա. Դ. *Սախարովի* հետ) ուժեղ մագնիս. դաշտի տաք պլազմայի պահման գաղափարը:

Նոբելյան (1958, Ի. Մ. *Ֆրանկի* և Պ. Ա. *Չերենկովի* հետ), ԽՍՀՄ Պետ. (1946, 1953) մրց-ներ:

ՏԱՄՄՍԱԱՐԵ (Tammsaare) Անտոն Հաննես (1878–1940), էստոնացի գրող: Հեղինակ է «Ճշմարտություն և արդարություն» (հ. 1–5, 1926–33) էպոպեայի, «Դժոխքի նոր Զար ոգին» (1939) փիլ-երգիծ. վեպի, նաև պատմվածքների, վիպակների, հոդվածների, հակաֆաշիստ., հակառազմ. թեմաներով «Հուդիթ» (1921), «Արքան մրսում է» (1936) պիեսների: Հայ. հրատարակվել է «Կյանք և սեր» (1978) վեպը:

ՏԱՄ-ՏԱՄ (tam-tam), ժամանակակից սիմֆ. նվագախմբում ընդգրկված հարված. երաժշտ. գործիք: Գոնգի տեսակներից է:

ՏԱՄՐՈՒՉԻ Վլադիմիր Ստեփանի (1892–1950), տանկ. զորքերի գեն-լեյտ. (1941): ԱՀՊ-ի ժամանակ մասնակցել է Կարինի (Էրզրում) գրավմանը (1916): Հայաստանի խորհրդայնացումից հետո եղել է Հայկ. 76-րդ լ-հրաձգ. դիվիզիայի շտաբի պետ: ՀՄՊ-ի ժամանակ եղել է Հվ-արմ. ռազմաճակատի ավտոզրահատանկ. զորքերի հրամ., ռազմաճակատի հրամ-ի տեղակալ: 1943-ի մայիսին անհիմն ձերբակալվել է: Մահացել է բանտում, հետագայում՝ արդարացվել:

ՏԱՅԱՄԱ Կատայ (Ռոկույա, 1872–1930), ճապոնացի նատուրալիստ գրող: Սկզբնավորել է «վատակուսի սյոսեցու» (ինքնակենսագր. վեպ) ժանրը, որին բնորոշ են հեղինակային «ես»-ի միտումնավոր մեկուսացումը հաս. խնդիրներից, մտերմիկ տվյալների մանրակրկիտ նկարագրությունները [«Անկողին», 1907, վեպ, «Կյանքս», «Կինս» (երկուսն էլ՝ 1908), «Ընտանեկան կապեր» 1910, ինքնակենսագր. վեպ-եռերգություն]:

ՏԱՅԱՆ Արբուն Նիկողոսի, **Արբուն Տայեցի** (1912–1983), թարգմանիչ, բանասեր: Թարգմանել է Ա. Դանտեի «Աստվածային կատակերգություն» (մաս 1–3, 1954–59, 3-րդ բրփխ. հրտ.՝ 1983) պոեմը, Բ. Չելլինիի «Ֆլորենտացի Մաեստրո Ջովաննի Չելլինիի որդի Բենվենուտոյի կյանքը...» (1974) ինքնակենսագր. վեպը, Օ. դը Բալզակի, Գ. Մոպասանի, Ա. Ֆրանսի, Պ. Մերիմեի ստեղծագործություններից, հեղինակ է «Դանտեի «Աստվածային կատակերգության» բանաստեղծական արվեստը և թարգմանության պրոբլեմները» (1982) ուսումնասիրության:

ՏԱՅԲԵՅ, ք. Չինաստանի Թայվան կղզու հս-արլ-ում, Թայվան պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 2,7 մլն (արվարձաններով՝ 8,5 մլն, 2010): Կղզու գլխ. տնտ., գիտամշակութ. կենտրոնն է, տրանսպորտ. խոշոր հանգույց: Զարգացած են արդ-յան բարձրտեխնոլոգ. ճյուղերը:

ՏԱՅԳԱ, հս. բարեխառն գոտու ասեղնատերև անտառներ՝ կազմված եղևնու, կուենու, սոճու հս. տեսակներից, երբեմն՝ լայնատերև ծառատեսակների աննշան խառնուրդից: Զբաղեցնում է Եվրասիայի և Հս. Ամերիկայի հս. մասը, Եվրոպայի, Ասիայի ու Հս. Ամերիկայի խաղաղօվկիանոս. ափի լեռն. շրջանները: S-ին բնորոշ է մի քանի ծառատեսակների համասեռ կազմը, աղքատ ենթանտառը կամ նրա բացակայությունը, խոտաթփուտների և մամուռների հարկերի միատեսակությունը:

ՏԱՅՄԵՆՆԵՐ (Hucho), **սիբիրական գետաձկներ**, սաղմոնաձկների ընտանիքի ձկների սեռ: Երկ.՝ մինչև 1,5 *մ*, կ. գ.՝ մինչև 60 *կգ*: Հայտնի է 4 տեսակ: Արդյունագործ. ձուկ է:

ՏԱՅՅԱՆ Վլոնդ (1884–1968), երաժշտագետ: Ուսումնասիրել է գրիգորյան երգեցողությունը, երաժշտ. հնագրությունը, հայ հոգևոր երաժշտությունը: 1921–27-ին՝ «Բազմավէպի» խմբ.: 1916–41-ին եվրոպ. նոտագրությամբ գրառել է և 1952-ից հրատարակել Սբ Ղազարում բանավոր հաղորդմամբ պահպանված *շարականների* եղանակները («Շարական Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ», հ. 1–8, 1952–76): Հեղինակ է նաև «Եղիշէի չորս յեղանակները հնագոյն գրչագրի մը մէջ» (1911),

«Կոմիտաս վարդապետ» (1936) և այլ աշխ-ների, աշխարհիկ և հոգևոր երգերի:

ՏԱՅՆԱՆ, ք-նվ՝ինգստ Չինաստանի Թայվան պրովինցիայում: Բն.՝ 1,88 մլն (2015): Մետակայքում արդյունահանում են կերակրի աղ:

ՏԱՅՈՑ ՔԱՐ, ամրոց և բնակավայր Տայք նահանգ-ի Ճակք գավ-ում՝ Իշխանավանից մոտ 20 *կմ* արլ.: Եղել է Սամիկոնյան տոհմի կենտրոններից: S. ք-ի ամրոցի մասին պատմ. աղբյուրներում պահպանվել են միայն հիշատակություններ: Հայտնի է S. ք-ի (Թավուզքարի) բազմանիստ կենտրոնագմբեթ եկեղեցին, որն այժմ կիսավեր է:

ՏԱՅՊԻՆՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ 1850–64, գյուղաց. ապստամբություն Չինաստանում՝ Ցին հարստության և մանջուրաչին. խոշոր հողատերերի դեմ: Ապստամբները Յանցզիի հովտում ստեղծել են «Մեծ բարօրության երկնային պետությունը» («Տայպին տյանգո»)՝ Նանկին մայրաքաղաքով (1853): Ճնշվել է մանջուրաչին. և անգլո-ֆրանս-ամերիկ. զորքերի միացյալ ուժերով:

ՏԱՅՔ, Մեծ Հայքի 14-րդ նահզ-ը: Տարածվում էր Ճորոխ գետի միջին հոսանքի և նրա վտակների ավազաններում, ինչպես նաև Կուր գետի ակունքի շրջանում: Հս-ից սահմանակից էր Եգերք և Խաղտիք երկրներին, հս-արլ-ից՝ Գուգարք, արլ-ից և հվ-ից՝ Այրարատ, հվ-արմ-ից և արմ-ից՝ Բարձր Հայք նահզ-ներին: S-ի մասին գրավոր առաջին տեղեկությունները հանդիպում են մ. թ. ա. XII–IX դդ-ի ասորեստան. սեպագիր արձանագրություններում՝ «Դայանի» («Դայաենի») անվանումով: Հույն պատմիչ Քսենոփոնը տայեցիներին անվանել է խիզախ ու ռազմատենչ մարտիկներ, որոնք կռվել են Հայաստանի սատրապ-թագավորի բանակում: 230-ական թթ-ին Հայոց արքա ***Խոսրով Ա*** Մեծը S-ի մեծագույն մասը տվել է Սամիկոնյանների նախ-յանը: Հայաստանի 591-ի բաժանմամբ S. անցել է Բյուզ. կայսրությանը, VIII դ-ի վերջին՝ Բագրատունիներին (տես ***Տայքի կյուրապաղապատություն***): Մանազկերտի ճակատամարտից (1071) հետո անցել է սելջուկ. թուրքերին: XII դ-ի վերջին և XIII դ-ի սկզբին հայ-վրաց. միացյալ ուժերն ազատագրել են S.: 1590-ի թուրք-պարսկ. պայմանագրով S. անցել է Օսմ. սուլթանությանը: 1877–78-ի ռուս-թուրք. պատերազմից հետո S-ի մի մասը տրվել է Ռուսաստանին: 1918–20-ին S-ի բնակիչները ենթարկվել են թուրք. կոտորածների, իսկ S-ի հին տարածքը, Կարսի մարզի հետ, վերստին զավթել են թուրքերը:

ՏԱՅՔԻ ԿՅՈՒՐԱՊԱՂԱՏՈՒԹՅՈՒՆ, Տայք-Կղարջքի իշխանապետություն, պետ. կազմավորում X դ-ում: Հիմնադրել են Մեծ Հայքի Տայք նահզ-ում և Գուգարք նահզ-ի Կղարջք գավ-ում հաստատված Բագրատունիները, որոնք ընդունել են քաղկեդոնականություն և իրենց տիրույթները կառավարել կայսեր. բարձր (գլխավորապես՝ ***կյուրապաղապատի*** և մագիստրոսի) տիտղոսներով: S. կ. առանձնապես հզորացել և ընդարձակվել է ***Դավիթ Կյուրապաղապատի*** օրոք: S. կ-յան ուժերը 987–989-ին աջակցել են ապստամբած ***Վարդաս Փոկասին***՝ ***Վասիլ II***-ի դեմ պայքարում: Սակայն վերջինս ճնշել է ապստամբությունը և Դավիթ Կյուրապաղատին հարկադրել իր տիրույթները «կտակել» կայսրությանը: Դավիթ Կյուրապաղատի սպանությունից (1000) հետո կայսրությունը զավթել է S. կ.:

ՏԱՆ, չին. կայսեր. հարստություն՝ 618–907-ին: Հիմնադրել է Լի Յուանը:

ՏԱՆ ԻՆ (1470–1524), չին գեղանկարիչ, գեղագիր, բանաստեղծ: Հեղինակ է «Մարդիկ», «Ծաղիկներ-թռչուններ» ժանրերով բնանկարների և կոմպոզիցիաների, որոնք աչքի են ընկնում որոշակիությամբ, նկարելու եղանակի մանրազնիությամբ («գունքի»):

ՏԱՆ ՍԱՆ ՑԶՈՒ (1550–1616), չին դրամատուրգ, բանաստեղծ: Հեղինակ է «Ծիրանագույն ֆլեյտան» (1579), «Քաջվարդապատ զրուցարան» (1598) երաժշտ. դրամաների, որտեղ կարևորվում են մարդկային սովոր. բնական զգացմունքները, նաև բանաստեղծությունների և հանգավորված արձակ գործերի:

ՏԱՆԱԳՐՆԵՐ (Tangara), ճնճղուկանմանների կարգի թռչունների ընտանիք: Երգեցիկ թռչուններ են: Երկ.՝ 7,6–30 *սմ*: Փետրավորումը վառ գույների է: Հայտնի է 236 տեսակ: Որոշ տեսակներ գրանցված են ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՏԱՆԱԿԱ, Կոյիչի (ծ. 1959), ճապոնացի ճարտարագետ: Աշակել է (1985–87) փափուկ լազերային դեսորբումային իոնացման (առանց մակրոմոլ-ների կառուցվածքը քայքայելու) եղանակ՝ սպիտակուցների զանգվածասպեկտրաչափ. վերլուծության համար:

Նորելյան մրց. (2002, Ջ. ***Ֆեննի*** հետ): Գիտ. աստիճան չունեցող միակ Նորելյան մրցանակակիրն է:

ՏԱՆԱՆԱԵՎ, Իվան Վլադիմիրովիչ (1904–1993), ռուս քիմիկոս: ՌԳԱ ակադ. (1958): Սոց. աշխ. հերոս (1984): Աշխ-ները վերաբերում են հազվագյուտ տարրերի ֆտորիդների, ֆեռոցիանիդների և ֆոսֆատների անօրգ. և վերլուծ. քիմիային, ֆիզքիմ. վերլուծությանը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1949, 1951, 1971):

ՏԱՆԳԱՆԻԿԱ (Tanganyika), լիճ Արլ. Աֆրիկայում, Կոնգոյի ԺՀ, Տանզանիայի, Զամբիայի և Բուրունդիի սահմանին՝ Արլ-աֆրիկ. բեկվածքների գոտում՝ 773 *մ* բարձր-յան վրա: Երկ.՝ մոտ 650 *կմ*, լայն.՝ 40–80 *կմ*, մակերեսը՝ 34 հզ. *կմ²*, խոր.՝ մինչև 1470 *մ* (Բայկալից հետո 2-րդը՝ աշխարհում), ավազանը՝ 244,5 հզ. *կմ²*: Արտահոսում է Լուկուգա գետը: S-ի ափերին են Կիգոմա, Բուժումբուրա, Կալիմա նվինզատ-ները: Հայտնագործել են անգլիացիները 1858-ին:

ՏԱՆԳԵՆՍ (լատ.՝ tangens – շոշափող), ***եռանկյունաչափական ֆունկցիա***:

ՏԱՆԳԵՆՍՆԵՐԻ ԹԵՈՐԵՄ, եռանկյունաչափության թեորեմ, որը կապ է հաստատում կամայական եռանկյան a, b կողմերի և նրանց հակադիր A, B անկյունների միջև. $\operatorname{tg}\frac{A-B}{2}=\frac{a-b}{a+b}\operatorname{tg}\frac{A+B}{2}$.

ՏԱՆԳԵՆՍՈՒԴ, հարթ կոր՝ y = tgx ֆունկցիայի գրաֆիկը: Տես ***Եռանկյունաչափական ֆունկցիաներ***:

ՏԱՆԳՈ (իսպ.՝ tango), հանդիսապար: Ճանաչված արգենտին., գնչուական, անդալուզ. և կրեոլ. S-ները: Տարածվել է 1910-ական թթ-ին՝ որպես սալոն. և էստրադ. ժանր: Երաժշտ. չափը՝ 2/4, տեմպը՝ հանդարտ:

ՏԱՆԳՈՒՏՆԵՐ, տիբեթա-բիրմանական խմբի ժողդ: X դ-ում Չինաստանի հս-ում ստեղծել են Սի Սյա պետությունը: Մոնղոլների՝ S-ի պետության ջախջախումից հետո ձուլվել են մոնղոլներին, մի մասը մտել է Ցինհայ պրովինցիայի տիբեթցիների կազմի մեջ:

ՏԱՆԵԳԱՄԻՄ, տիեզերական ճապոնիայում: Հիմնադրվել է 1969-ին: Ունի մի քանի մեկնարկ. համալիրներ: Առաջինն արձակվել է «ԷՏՍ -1» ԵԱՄ 1975-ին:

ՏԱՆԵԵՎ, Սերգեյ Իվանովիչ (1856–1915), ռուս. կոմպոզիտոր, դաշնակահար, երաժշտության տեսաբան: Հեղինակ է «Օրեսթեա» օպերայի (ըստ Էսքիլեսի, 1895), «Հովհաննես Դամասկացի» (1884), «Սաղմոսի ընթերցումով» (1915) կանտատների, սիմֆոնիաների, խմբերգերի, ռոմանսների, կամեր-գործիք. երկերի: Սաներից են Գենարիոս ***Ղորղանյանը*** և Կոստանդին ***Սարաջևը***:

ՏԱՆԶԱՆԻԱ, (Tanzania), **Տանգանիայի Միացյալ Հանրապետություն** (United Republic of Tanzania), պետություն Արլ. Աֆրիկայում: Սահմանակից է Քենիային, Ուգանդային, Զամբիային, Մոզամբիկին, Մալավիին, Ռուանդային, Բուրունդիին և Կոնգոյի ԺՀ-ին: Տարածքը՝ 945,1 հզ. *կմ²*, բն.՝ 49,25 մլն (2013): Մայրաքաղաքը՝ ***Դոդոմա***: Պետ. լեզուները՝ սվահիլի, անգլ.: Կառավարման ձևը՝ նախագահահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ ԱԺ-ն: Հավատացյալների մեծ մասը քրիստոնյա է (50 %), կան նաև մահմեդականներ (30 %) և ավանդ. հավատալիքների հետևորդներ: Բաժանված է 26 վարչ. մարզերի: Անդամակցում է ՄԱԿ-ին, Ազգերի համագործակցությանը, Աֆրիկ. միությանը ևն: Աղքատ երկիր է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 1,4 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է կոպրա, տավարի միս, կակաո, բնափայտ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ տանզան. շիլլինգ:

S-ի բնիկները եղել են բուշմեններին ազգակից ցեղեր, որոնց հետագայում ոչնչացրել կամ ձուլել են բանտուներն ու այլ ցեղեր: VII–VIII դդ-ում S-ի մայրցամաք. մասերում, Զանզիբար և այլ կղզիներում սկսել են բնակվել արաբներ: XVI դ-ում S-ում հայտնվել են պորտուգալացիներ, որոնց XVIII դ-ում դուրս են մղել Օմանի սուլթանության արաբները: S-ի առափնյա շրջաններում և կղզիներում կազմավորվել է մահմեդականություն ընդունած սվահիլի ժողդ-ը:

Մինչև XIX դ-ի սկիզբը Զանզիբար կղզին և S-ի առափնյա շրջանները եղել են Մասկատի սուլթանների գերիշխանության տակ: 1856-ին ձևավորվել է Զանզիբարի ինքնուրույն սուլթանությունը: 1884-ին S-ի մայրցամաք. մասը գրավել է Գերմանիան: 1890-ին հաստատվել է անգլ. հովանավորություն: ԱՀՊ-ից հետո S-ի մայրցամաք. մասը (անվանվել էր Տանգանիկա) տրվել է Մեծ Բրիտանիային՝ որպես մանդատ., ԵՀՊ-ից հետո՝ Մեծ Բրիտանիայի խնամակալության տակ գտնվող տարածք: 1920–50-ական թթ-ին ստեղծվել են հաս-քաղ. կազմ-յուններ, որոնք պայքարել են երկրի անկախության համար: 1961-ի դեկտ. 9-ին հռչակվել է Տանգանիկայի, 1963-ի դեկտ. 10-ին՝ Զանզիբարի անկախությունը: 1964-ին Զանզիբարում հեղ-յան հետևանքով սուլթանը վտարվել է երկրից և Տանգանիկան ու Զանզիբարն ստեղծել են S-ի Միացյալ Հանրապետությունը: Որդեգրել են սոց.

պետություն կառուցելու քաղ–յուն: 1990–ական թթ–ին ներդրվել է բազմակուս. համակարգ, 1995–ից անցկացվում են ժողովրդավար. ընտրություններ:

ՏԱՆԺԵՐ, ք. Մարոկկոյում, Տանժեր Տետուան մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 762 հզ. (2010): Կարևոր տրանսպորտ. հանգույց է, նվինգստո Ջիբրալթարի նեղուցի ափին, զբոսաշրջության կենտրոն: Հիմնադրվել է մ. թ. ա. 2–րդ հզ–ամյակի վերջից՝ որպես փյունիկյան բնակավայր: 1923–56–ին ունեցել է հատուկ միջազգ. կարգավիճակ, 1957–ին վերամիավորվել է Մարոկկոյին:

ՏԱՆԻՉԱԿԻ Չյունիտիրո (1886–1965), ճապոնացի գրող: Հեղինակ է «Հիմարի սերը» (1925), «Սյունկինի պատմությունը» (1933) վեպերի, «Դաջվածք» (1910) պատմվածքների ժող–ի, որտեղ նրբորեն միահյուսված են հոգեբ. տարրերը, էրոտիկան և գեղագիտ–յունը, «Մանր ձյուն» (1943–48), «Սիգեմոտոյի մայրը» (1950) վեպերի:

ՏԱՆԻՆՆԵՐ, **տանիդներ** (ֆրանս.՝ tanner – դաբաղել), ֆենոլ. միացություններ, պարունակվում են շատ բույսերում: Առաջացնում են ամուր կապեր սպիտակուցների և այլ կենսապոլիմերների հետ: Օգտագործվում են կաշին դաբաղելու, ներկման ժամանակ գործվածքեղենը խածատելու համար, բժշկության մեջ՝ որպես կապակցանյութ:

ՏԱՆԿ Մաքսիմ (1912–1995), բելառուս բանաստեղծ: ԲԽՍՀ ժող. բանաստեղծ (1968): ԲԽՍՀ ԳԱԱ ակադ. (1972): Սոց. աշխ. հերոս (1974): Հեղինակ է «Յանուկ Սյալիքա» (1942) պոեմի, «Որ իմանան» (1948), «Շանթի հետագիծը» (1957), «Մի կում ջուր» (1964), «Եղիցի լույս» (1972) ժող–ների: Տ–ի մի շարք բանաստեղծություններ թարգմանվել են հայ.: ԽՍՀՄ Պետ. (1948), Լենինյան (1978) մրց–ներ:

ՏԱՆԿ (անգլ.՝ tank), **հրասայլ**, մարտ., թրթուրավոր, զրահապատ մեքենա: Ունի պտտվող աշտարակում տեղակայված թնդանոթ՝ հիմնականում ուղիղ նշանառության հրաձգության համար: Առաջին անգամ կիրառել են բրիտ. զորքերը 1916–ին ԱՀՊ–ում: Արտադրվում են թեթև, միջին և ծանր տեսակի Տ–եր: 1960–ական թթ–ից տարբեր երկրներում միջին և ծանր Տ–ի փոխարեն սկսել են արտադրել 1 հիմն. Տ., որի հիմն. զենքը թնդանոթն է, օժանդակը՝ գնդացիրը և այլ զենքեր: Անձնակազմը՝ 3–4 մարդ, հրանոթի տրամաչափը՝ 105–152 *մմ*, արագությունը՝ 41–70 *կմ/ժ*, զանգվածը՝ 36–55 *տ*: Որոշ երկրներ թողարկում են թեթև ավիատեղափոխունակ լողացող Տ–եր (դեսանտային):

ՏԱՆԳԵՆԻ (Pyrus), վարդազգիների (վարդածաղիկներ) ընտանիքի պտղատու ծառերի կամ թփերի ցեղ: Հայտնի է 60 տեսակ, ՀՀ–ում՝ 16 (20)՝ Արագածոտնի, Լոռու, Տավուշի, Վայոց ձորի, Սյունիքի և այլ մարզերում, որտեղ մշակության մեջ է սովոր. Տ.: Տ–ի մասին հիշատակություններ ունեն Ագաթանգեղոսը, Ամիրդովլաթ Ամասիացին և ուր.: ՀՀ–ում հայտնի են Տ–ի Մալաչա, Կարմրենի, Ձմեռնուկ, Ամառային գեղեցկուհի և այլ սորտեր: Տ–ի բերքատվությունը 100–250 *գ/հա* է: Մեղրատու է, արժեքավոր է փայտանյութը:

ՏԱՆԳԵՆՈՒ ՄԼՈՒԿ, *ժանեկագործների* ընտանիքի միջատ, տանձենու, խնձորենու, բալենու, սալորենու վնասատու: Սև է, երկ.՝ 3–3,5 *մմ*: Մնվում է տերևների հյութով:

ՏԱՆԳԵՆՈՒ ՊՏՂԱԿԵՐ, *փերևոլորների* ընտանիքի թիթեռ. տանձենու վնասատու է: Թևերը մուգ մոխրագույն են՝ շերտերով: Մնվում է (թրթուրները) սերմերով:

ՏԱՆԳՈՒՏ, գետ ՀՀ Լոռու մարզում, Փամբակի աջ վտակը: Սկիզբ է առնում Փամբակի լ–շղթայի Թեժլեռ լ–գագաթի հս. լանջից՝ 2900 *մ* բարձր–յունից: Երկ.՝ 22,4 *կմ*, ավազանը՝ 141 *կմ²*: Գետահովիտը V–աձև է, ստորին հոսանքում լայնանալով՝ ձուլվում է Փամբակի գոգավորությանը: Մնումը ձնաանձրևային է, վարարումը՝ մայիս–հունիսին: Տարեկան միջին ծախսը՝ 1,75 *մ³/վ*: Գետահովիտն ունի ոռոգեցիոն մեծ հնարավորություն: Ջրերն օգտագործում են ոռոգման նպատակով:

ՏԱՆՇԱՆ, ք. Չինաստանի Հեբեյ պրովինցիայում: Բն.՝ 1,6 մլն (արվարձաններով՝ 2,9 մլն, 2010): Ծանր– և ածխարդ–յան կենտրոն է: Զգալիորեն տուժել է 1976–ի երկրաշարժից:

ՏԱՆՈՂ ՀՐԹԻՒ, բազմաստիճան (2 և ավելի աստիճանի) կառավարվող հրթիռ՝ օգտ. բեռը (ԵԱՄ, տիեզերանավեր, ինքնաշխատ միջմոլորակ. կայաններ ևն) տիեզերք դուրս բերելու համար: Տ. հ. օգտ. բեռին հաղորդում է 1–ին կամ 2–րդ տիեզ. արագությունից մեծ կամ հավասար արագություն: Ժամանակակից Տ. հ–ի թռիչքի տևողությունը հետագծի ակտիվ տեղամասում մոտ 17 *ր* է, մեկնարկ. զանգվածը՝ մինչև 3000 *տ* (զանգվածի 90 %–ը վառելանյութն է):

ՏԱՆՏԱԼ (Tantalum), Ta, տարրերի պարբեր. համակարգի V խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 73, ա. զ.՝ 180,948: Կոչվել է հինհուն. դից–յան հերոս Տանտալոսի անունով: Հազվագյուտ տարր է: Կապտավուն երանգով մոխրագույն, դժվարահալ ծանր մետաղ է, խտ.՝ 16,6 *գ/սմ³*, $t_{հալ.}$՝ 3014^{0}C: Բնության մեջ հանդիպում է *նիոբիումի* հետ: Քիմիապես պասսիվ է: Օգտագործվում է մետաղագործության (կոռոզիակայուն, կրակադիմացկուն համաձուլվածքների բաղադրիչ), քիմ. մեքենաշինության, բժշկության (կարերի վերադրում, ոսկորների և հոդերի ամրակում), ոսկերչության (պլատինի փոխարեն) մեջ, միջուկ. էներգետիկայում, էլեկտրոնիկայում:

ՏԱՆՏԱԼԱՅԻՆ ՀԱՄԱՁՈՒԼՎԱԾՔՆԵՐ, տանտալի հիմքով համաձուլվածքներ: Սովորաբար տանտալը լեգիրում են վոլֆրամի, ռենիումի և այլ տարրերի հետ: Ունեն բարձր մեխ. հատկություններ սովոր. ջերմաստիճանում, կրակադիմացկունություն ($t_{հալ.}$՝ 3000^{o}C), կոռոզիակայունություն, ջերմ. ընդարձակման ցածր գործակից:

ՏԱՆՏԱԼՈՍ, Փռյուգիայի կամ Լիդիայի արքան հուն դից–յան մեջ, որին աստվածները դատապարտել էին հավերժ. տանջանքների՝ ջրի մեջ կանգնած: Տ. տոչորվել է ծարավից ու քաղցից: Երբ Տ. փորձում էր ջրից կում անել, ջուրն էր հետ քաշվում, երբ որ ձգտում էր մրգերին հասնել, ճյուղերն էին հետ քաշվում (այստեղից էլ՝ «տանտալոսյան տանջանքներ» արտահայտությունը):

ՏԱՆՈՒՄԱ, Օկիցուգու (1719–1788), Ճապոնիայի փաստացի կառավարիչը՝ 1772–86–ին: Մերկանտիլիզմի առաջին ջատագովներից Ճապոնիայում:

ՏԱՇԻՐ, գետ ՀՀ Լոռու մարզում, Ջորագետի ձախ վտակը: Սկիզբ է առնում Վիրահայոց լ–շղթայի արմ. լանջերից (Վրաստան)՝ 1800 *մ* բարձր–յունից: Երկ.՝ 54 *կմ*, ավազանը՝ 470 *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 2,52 *մ³/վ*: Վերին հոսանքում գետահովիտը V–աձև է, այնուհետև հոսում է Լոռու դաշտով, առաջացնում գետաղորաններ: Մնումը հիմնականում ձնաանձրևային է (76 %), վարարումը՝ մայիս–հունիսին, հաճախ են աղետաբեր սելավները: Տ–ից սկիզբ է առնում Լոռու ջրանցքը:

ՏԱՇԻՐ, գվո Գուգարք նահանգ–ում: Ընդգրկել է Ջորագետ, Փամբակ, Դերեդ (վերին և միջին հոսանքը) գետերի ավազանները: Համապատասխանում է ՀՀ Լոռու մարզի տարածքի հս–արլ. հատվածին: Մ. թ. ա. VIII դ–ից եղել է Ուրարտուի, ապա՝ Երվանդունիների (մ. թ. ա. VI–II դդ.) և Արտաշեսյանների (մ. թ. ա. II–I դդ.) պետության կազմում: Արշակունյաց թագավորության օրոք (I–V դդ.) Գուգարքի բդեշխների կալվածն էր: Արշակունյաց թագավորության անկումից հետո (428) Տ. Գուգարքի հետ մտել է Վրաց մարզպանության մեջ: Արաբ. նվաճումներից (VII դ.) հետո Տ–ի իշխանությունը կազմալուծվել է: IX դ–ի վերջին *Աշոտ Ա Բագրատունին* Տ. ազատագրել է արաբներից և միացրել Բագրատունյաց ոստանին: Տ–ում 966–ին ստեղծվել է նոր վտմ՝ «Տաշիր երկիրը», որը շուտով դարձել է թագավորություն (տես ***Կյուրիկյան թագավորություն***): XIII դ–ից գվո–ը Լոռե բերդի անունով կոչվել է Լոռի:

ՏԱՇԻՐ (1834–1935–ին՝ Վորոնցովկա, 1935–91–ին՝ Կալինինո), ք. (1983–ից) ՀՀ Լոռու մարզում՝ Երևանից 162 *կմ* հս՝ Տաշիր գետի ափին՝ Լոռու սարահարթում: Բն.՝ 8,7 հզ. (2012): Հիմնադրվել է որպես ռուս մոլոկան աղանդավորների աքսորավայր: Տնտ–յան մեջ գերակշռում է կաթի վերամշակման ճյուղը:

«ՏԱՇԻՐ», արդ. շին. ավելի քան 200 ընկերների խումբ: Հիմնադրվել է 1999–ին: Գործունեության հիմն. ուղղություններն են շին–յունը, անշարժ գույքի կառավարումը, ֆինանսները, Էներգետիկան, արտադրյունը, հյուրանոց. ու ռեստորան. ոլորտները: Կենտրոնատեղին՝ Մոսկվայում:

ՏԱՇԻՐԻ ՋՐԱՆՑՔ, ՀՀ Լոռու մարզում: Սկիզբ է առնում Ջորագետի աջ ափից, անցնում Նովոսելցովո գ–ի հս–ով, ձգվում մինչև Սարատովկա գ.: Շահագործման է հանձնվել 1958–ին՝ Լոռու ջրանցքին Տաշիր գետով լրացուցիչ ջուր տալու նպատակով: Երկ.՝ 12 *կմ*, ջրթողունակությունը՝ 2 *մ³/վ*: Ջրառը կատարվում է պատվարային եղանակով: Ոռոգում է 700 *հա* հողատարածք:

ՏԱՇԻՐ–ԶՈՐԱԳԵՏԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, տես ***Կյուրիկյան թագավորություն***:

ՏԱՇԿՈՎ Եվգենի Իվանովիչ (1927–2012), ռուս կինոռեժ.: ՌԴ ժող. արտիստ (1995): Նկարահանել է «Ծարավ» (1960), «Վաղը եկեք» (1963), «Ճարպիկները» (1987), «Սայոր Վիխր» (1968), «Նորին գերազանցության համարզը» (1972), «Ռեռահասը» (1983, վերջին երեքը՝ հեռուստաֆիլմ) և այլ կինոնկարներ:

ՏԱՇՅԱՆ Հակոբոս (Թաշճյան Փրանկիսկոս Մելքոնի, 1866–1933), ձեռագրագետ, բանասեր, լեզվաբան, հայագետ: ՎենՄՄ անդամ (1885), քհն. (1889): Հեղինակ է «Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա» (1895, նկարագրել է 573 ձեռ.), «Ագաթանգեղոս առ Գէորգայ ասորի եպիսկոպոսին...» (1891), «Մատենագրական մանր

ուսումնասիրութիւնք» (մաս 1, 2, 1895, 1901, մաս 3, «ՀԱ», 1900–01), «Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ» (1898), «Ժողովածոյք առակաց Վարդանայ» (1900), «Աշշակունի դրամներ» (մաս 1, 2, 1917, 1961), «Հին Հայաստանի արևմտեան սահմանը...» (1917–18, հրտ.՝ 1948), «Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչև Կարին» (1921), «Հաթեր եւ ուրարտեանք» (1934), «Հետազօտական պատմութիւն մատենագրութեան հայոց» (1970), «Տայք, դրացիք եւ Խոտորջուր» (1973), «Բառախօսական դիտողութիւններ հայերէն գիտական լեզուի մասին» (1926) և այլ աշխ–ների: Կատարել է գեղ. և գիտ. թարգմ–յուններ:

ՏԱՇՏՈՒՆԻ ԼԵՌՆԱՆՁՔ, Մեղրու լ–շղթայի արմ–ում՝ համանուն գյուղի մոտ՝ 2480 *մ* բարձր–յան վրա: Միացնում է Ողջի և Մեղրի գետերի ավազանները: S. լ–ով է անցնում Կապան–Մեղրի ճանապարհը:

ՏԱՇՔԵՆԴ, Ուզբեկստանի մայրաքաղաքը և համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 2,2 մլն (արվարձաններով՝ 3,2 մլն, 2010): Տրանսպորտ. հանգույց է: Կան մեքենաշին., թեթև, սննդի, քիմ., դեղագործ. արդ–յան և այլ ձեռն–ներ: Գործում են բազմաթիվ բուհեր (այդ թվում՝ համալսարան, կոնսերվատորիա), թատրոններ (Օպերայի և բալետի, Ռուս. դրամատիկ. ևն), թանգարաններ: Հայտնի է IV–V դդ–ից, XI դ–ից՝ S. անունով:

ՏԱՇՔԵՆԴԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Ուզբեկստանի ազգային համալսարան Մ. Ուլուգբեկի անվան, հիմնադրվել է 1918–ին՝ որպես ժող. համալսարան: 1920–23–ին՝ Թուրքեստանյան, 1923–60–ին՝ Միջինասիական պետ., 1960–ից՝ S. հ.: 2015–ին ուներ ավելի քան 11 հզ. ուսանող:

ՏԱՇՔԵՆԴԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ պետական, 1934–ից՝ Հ. Աբելյանի անվ., գործել է 1924–37–ին: Բեմադրվել են օպերա–օպերետ. ներկայացումներ, նաև Շիրվանզադեի «Պատվի համար», Գ. Սունդուկյանի «Պեպո», Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար», Ա. Ս. Պուշկինի «Քարե հյուր» և այլ գործեր: Թատերախմբում՝ ռեժ–ներ՝ Լ. Աբրահամյան, Գ. Թավրիզյան, Կ. Ալվարյան, դերասաններ՝ Ժ. Թովմասյան, Կ. Միրզոյան, Մ. Մսրլյան, Հ. Դանիելյան, Հ. Աբելյան (1934–ին) և ուր.:

ՏԱՉԻՐԱ (Táchira), նահանգ Վենեսուելայում: Տարածքը՝ 11,1 *կմ*², բն.՝ 1,67 մլն (2011): Վարչ. կենտրոնը՝ *Սան Քրիստոբալ*:

ՏԱՊԱՆ, 1. այն նավը, որով, ըստ Աստվածաշնչի (Հին կտակարան), *Նոյը*՝ իր ընտանիքով և բոլոր տեսակի կենդանիներով, փրկվել է աշխարհակործան ջրհեղեղից: 2. Արկղաձև մեծ կամ փոքր շինվածք՝ կառույց: 3. Ննջեցյալին թաղելու արկղ, դագաղ: 4. Գերեզման, շիրիմ: 5. Տապանաքար, շիրմաքար:

ՏԱՊԱՆԱՔԱՐ, շիրմաքար, գերեզմանաքար, *մահարձանի* տեսակ: Հնագույն S–հուշակոթողները *մենհիրներն* են: IX–XIII դդ–ում Հայաստանում տարածված էին օրորոցաձև, քառանկյունի, կոփածո հարթ S–երը, որոնց կից կանգնեցվել է *խաչքար*: XV–XVII դդ–ում ուշագրավ են տապանագրերով և կենցաղ. քանդակներով ինքնատիպ խոյաձև S–երը: 1930–ական թթ–ից տարածվել են նաև հանգուցյալի պատկերով կամ կիսանդրիով, տարբեր հորինվածքներով մահարձանները:

ՏԱՊԱՐ, միասայր կամ երկսայր կացնաձև ռազմ. զենք:

ՏԱՊԻԵՄ (Tapies) Անտոնի (1923–2012), իսպանացի (կատալոնացի) գեղանկարիչ, գրաֆիկ, քանդ., արվ–ի տեսաբան: XX դ–ի 2–րդ կեսի ճանաչված նկարիչներից: Ներկի հաստ շերտով կոպիտ ֆակտուրաներով արստրակտ կտավներում օգտագործել է կոլաժի տարրեր: Կրել է ձեն–բուդդիզմի ազդեցությունը («Գործվածքի մաս», ասամբլաժ, 1973): Որոշ գործերում նկատելի է բողոքը Ֆ. *Ֆրանկոյի* վարչակարգի դեմ:

ՏԱՊՏԻ, գետ Հնդկաստանում: Երկ.՝ մոտ 724 *կմ*, ավազանը՝ 77,8 հզ. *կմ*², ջրի միջին ծախսը՝ 489 *մ*³/*վ*: Նավարկելի է 300 *կմ*:

ՏԱՋԻԿԵՐԵՆ, *տաջիկների* լեզուն, Տաջիկստանի պետ. լեզուն: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի հնդիրան. ճյուղի հվ–արմ. խմբին: Հնագույն գրավոր հուշարձաններն ավանդվել են IX դ–ից: Գրի հիմքում եղել է արաբ., 1930–40–ին՝ լատ., 1940–ից՝ ռուս. այբուբենը:

ՏԱՋԻԿՆԵՐ, ժողդ, Տաջիկստանի հիմն. բնակչությունը: Ընդհ. թիվը՝ 4,6 մլն (2010): Ապրում են նաև Ուզբեկստանում, Իրանում, Աֆղանստանում ևն: Լեզուն՝ տաջիկ.: Հիմնականում սուննի մահմեդական են:

ՏԱՋԻԿՍՏԱՆ, Տաջիկստանի Հանրապետություն, պետություն Կենտր. Ասիայում: Սահմանակից է Ուզբեկստանին, Ղրղըզստանին, Չինաստանին և Աֆղանստանին: Տարածքը՝ 143,1 հզ. *կմ*², բն.՝ 8,6 մլն (2015): Մայրաքաղաքը՝ *Դուշանբե*: Պետ. լեզուն՝ տաջիկ.: Կառավարման ձևը՝ նախագահահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը: Հավատացյալների մեծ մասը մահմեդական է: Բաժանված է հանրապետ. ենթակայության 13 շրջանի, 2 մարզի և Լեռն. Բադաշխանի ԻՄ–ի: Անդամակցում է ՄԱԿ–ին, ԱՊՀ–ին, ՀԱՊԿ–ին, ԵԱՏՄ–ին ևն: Անցում. տնտ–յամբ երկիր է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 1,8 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է ալյումին, էլեկտրաէներգիա, բուս. յուղ, բամբակ, մրգեր ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, նավթամթերք. քիմիկատներ, դեղեր, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ սոմոնի:

S–ի տարածքում մ. թ. ա. I հզ–ամյակում առաջացել է Բակտրիա պետությունը: IX–X դդ–ում մտել է Սասանյան Իրանի կազմի մեջ: XIII դ–ի սկզբներին S–ի տարածք են ներխուժել մոնղոլ–թաթարները: XVI դ–ում երկիրն ընդգրկվել է Խիվայի խանության կազմում: XVIII դ–ում կազմավորվել է Կոկանդի խանությունը, և XIX դ–ի 1–ին կեսին S–ի տարածքը բաժանվել է Կոկանդի ու Բուխարայի խանությունների միջև: 1868–ին ռուսները գրավել են Սամարղանդը, և Բուխարայի էմիրը ենթարկվել է Ռուսաստանին: 1917–ին, Հոկտ. հեղ–յունից հետո, խորհրդ. իշխանություն է հաստատվել ամբողջ Թուրքեստանյան երկրամասում, նաև S–ի հս. շրջաններում: 1921–ի աշնանից մինչև 1923–ի ամառը տեղի են ունեցել ազգայն. խմբավորումների ընդվզումներ: 1924–29–ին S. ԻՀ էր Ուզբ. ԽՍՀ–ի կազմում, 1929–ի հոկտ. 16–ին վերակազմավորվել է Տաջիկ. ԽՍՀ–ի և այդ կարգավիճակով ընդգրկվել է ԽՍՀՄ կազմի մեջ: Անկախացել է 1991–ին: 1992–97–ին երկրում տեղի է ունեցել քաղաքաց. պատերազմ: 1994–ից երկրի նախագահը Է. Ռահմոնն է:

S–ի հայ համայնքը ձևավորվել է XIX դ–ի 2–րդ կեսին, երբ Ղարաբաղից, Նախիջևանից, Զանգեզուրից, Իրանից գաղթած հայերը հաստատվել են Դուշանբեում և Աֆղանստանի հետ սահմանամերձ քաղաքներում: XIX դ–ի վերջին հայերին է պատկանել առևտրի մենաշնորհը: Հայ գործարարներն ու արդյունաբերողները տնօրինել են նաև բամբակի, նավթի, էլեկտրաէներգիայի արտադրման ու արդյունահանման զգալի հատվածը:

XX դ–ի սկզբին S–ում հիմնադրվել են հայկ. հաս. կազմ–յուններ, աշխուժացել է ազգ. մշակութ. կյանքը: 1990–ական թթ–ին ԽՍՀՄ փլուզումից հետո երկրում ստեղծված անկայուն քաղ. վիճակի պատճառով հայերի մի մասն արտագաղթել է: Ներկայում S–ում ապրում է շուրջ 1 հզ. հայ (այլ տվյալով՝ 3 հզ.): Դուշանբեում գործում է «Մեսրոպ Մաշտոց» հայկ. մշակութ. միությունը:

ՏԱՌ, 1. գրության նշան, տպատառ, 2. գրույթ կամ այբուբենի միավոր, որն ինքնուրույն կամ այլ նշանների զուգակցությամբ օգտագործվում է գրավոր խոսքի հնչյունը կամ հնչույթը և նրանց տիպ. միացություններ (տառախմբեր) նշանակելու համար: Երբեմն մեկ հնչույթն արտահայտվում է մի քանի տառով (գերմ., ֆրանս.՝ խ, շ, չ) կամ մի քանի հնչույթներ արտահայտվում են մեկ տառով (հայ.՝ ո, և):

ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ, որևէ լեզվի բառերի արտասանության գրանցումը մեկ այլ լեզվի այբուբենով կամ ընդունված պայման. նշաններով:

ՏԱՌԱԳՐՎԵՍ, գրաֆիկայի բաժին (տառային գրաֆիկա), որի հիմն. միջոցները տառերի գծերի (հիմն. և լրացուցիչ) հաստություններն ու ձևերն են, նրանց համամասնությունները, նպատակը՝ դյուրընթեռնելի, դյուրընկալելի ու գեղեցիկ տառատեսակների ստեղծումը: Առաջին տպագրությունները կատարվել են ձեռագրին շատ մոտ տառատեսակով, իսկ լատ. առաջին՝ «Անտիկվա» տպատառերն ստեղծվել են Գուտենբերգի օգտագործած «Գոթիկա» ձեռագիր տառերի հիման վրա: Տառաստեղծման հարցերով զբաղվել են Ա. Մանուցին, Լեոնարդո դա Վինչին, Ա. Դյուրերը, Լ. Պաչիոլին, Ժ. Տորին և ուր.: XVI–XVII դդ–ում հայտնի էին էթիենների, Պատենի և Էլզևիրների հրատարակչատների տառատեսակները, տառափորագրիչներ Կլոդ Գարամոնը (1480–1561), Ֆիլիպ Գրանժոնը (1666–1714), Ամբրուազ Դիդոն (1730–1804) և ուր.:

Հայ. առաջին տպատառերը նույնպես պատրաստվել են ձեռագրի (բոլորգրի) նմանությամբ և օգտագործվել *Հակոբ Մեղապարտի* հրտ–յուններում: Իսկ առաջին իսկական տպատառերը («Անտիկվայի» սկզբունքներով՝ բոլորգրի հիման վրա) 1579–ին պատրաստել է ֆրանսիացի տառափորագրիչ Ռոբերտ Գրանժոնը (1513–1589/90)՝ *Մուլթանշահ Աբգարյան Թոխաթեցու* պատվերով. տպագրված առաջին գիրքը «Տօմար Գրիգորեանն» է (1584): Հայ. Աստվածաշունչ տպագրելու համար *Սեպթեմս Ծարեցին* 1658–ին տառեր է պատվիրել Քրիստոֆեր վան Դեյքին (1605–1669), որի տառաշարը համալրվել է *Ոսկան Երևանցու* նախաձեռնությամբ. դրանցով է տպագրվել հայ. առաջին Աստվածաշունչը (1666–68): Այդ տառերը հայտնի են որպես «Ոսկանյան կամ Աստվածաշնչյան տառեր» և օգտագործվել են շուրջ 200 տարի:

Հայ. տպատառեր պատրաստել է նաև հունգար տառափորագրիչ Միկլոշ Կի–

շը (1650–1702)՝ ***Սեպրթեոս Վանանդեցու*** պատվերով. տպագրված առաջին գիրքը Շարակնոց է (1684): Դրանք Մխիթար Սեբաստացու հավատարմատարը 1729–ին գնել և տարել է Վենետիկ, որոնց հենքի վրա այնտեղ հետագայում մշակվել են «Վենետ» և «Վիեն» տառատեսակները (Ս. Հոֆեր, Ա. Այտընյան և ուր.): Հայկ. Տ. հետագայում կատարելագործվել է Փարիզում (Ճանիկ ***Արամյան***, տես ***Արամյան*** տառեր), Կ. Պոլսում (Հովհաննես ***Մյուհենփեյան*** և ուր.) և այլուր:

Խորհրդ. շրջանում հայկ. տառատեսականին հարստացել է 1920–30–ական թթ–ին ԽՍՀՄ–ում լայնորեն տարածված «Գրոտեսկ»–ով, 1950–60–ական թթ–ին մշակվել են «Մնացականյան», «Ատդ», «Զվարթնոց», «Հանրագիտարանային» (հատուկ՝ «ՀՍՀ»–ի համար), «Նոր հայկական», «Նորք», «Եղեգնաձիր լարադին», «Դպրոցական», «Արմենուհի» և այլ տառատեսակաշարեր, ձևավորվել է տառաստեղծների նոր սերունդ: 1990–ական թթ–ից՝ համակարգչ. գրաֆիկայի ներդրման շնորհիվ ստեղծվել են հայ. համակարգչ. տառատեսակի առաջին նմուշները՝ «Անտիկվա» ոճի «Արիալ Արմենիա» և գծափակերով «Թայմս Անտիկվա»: Վերջին 2 տասնամյակում լայնորեն կիրառվում են Ռուբեն Թարումյանի, Էդիկ Ղաբուզյանի և այլ տառաստեղծների համակարգչ. տառատեսակներ:

ՏԱՌԵԽ (Chalcalburnus tarichi), **Վանա տառեխ**, ծածանազգիների ընտանիքի տառեխների սեռի ձուկ: Մարմինը երկարավուն է (5 անգամ մեծ լայն–յունից): Աջ ծնոտն առաջ եկած է, թեփուկների վրա կան մուգ կետեր: Տարածված է միայն Վանա լճում:

ՏԱՌԵԽԻԿՆԵՐ (Alburnoises), ***ծածանաձկների*** ընտանիքի ձկների սեռ: Մարմնի երկ.՝ 8–14 *սմ*: Հայտնի է 4 տեսակ՝ Եվրոպայի, Առաջավոր և Միջին Ասիայի քաղցրահամ ջրերում, ջրամբարներում: ՀՀ գրեթե բոլոր գետերում ու լճերում (բացի Սևանա լճի ավազանից) հանդիպում է հայկ. Տ.: Երկ.՝ մինչև 12 *սմ*, կ. զ.՝ 35 *գ*: ՀՀ առանձին ջրավազաններում Տ. մեծաքանակ են և կարող են սիրող. որսորդության ձուկ լինել:

ՏԱՌԵՂՆԵՐ (Ardeidae), արագիլանմանների կարգի թռչունների ընտանիք: Հայտնի է 62 տեսակ, ՀՀ–ում՝ 9 (եգիպտ., դեղին, շիկակարմիր, մոխրագույն, փոքր ու մեծ սպիտակ Տ. ևն): Կտուցը սրածայր է, ուղիղ, ոտքերը՝ դեղին կամ գորշագույն:

ՏԱՌԼԵ Եվգենի Վիկտորովիչ (1875–1955), ռուս. պատմաբան (ծագումով՝ հրեա): ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1927): Հեղինակ է «Բանվոր դասակարգը Ֆրանսիայում հեղափոխության դարաշրջանում» (հ. 1, 2, 1909, 1911), «Ցամաքային բլոկադա» (1913), «Նապոլեոն» (1936, հայ. հրտ.՝ 1941), «Թալեյրան» (1939), «Նապոլեոնի արշավանքը Ռուսաստան» (1937, հայ. հրտ.՝ 1939), «Ղրիմի պատերազմը» (հ. 1, 2, 1941, 1944) և այլ աշխ–ների: Հայ. հրատարակվել են նաև Տ–ի այլ աշխ–ներ: 1930–34–ին բռնադատվել է «Ակադեմիայի գործով»:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1942, 1943, 1946):

ՏԱՌՆՈՎՍԿԻ Վենիամին Միխայլովիչ (1837–1906), ռուս. բժիշկ, վեներաբան, գիտ. դպրոցի և Եվրոպայում սիֆիլիսաբան. ու մաշկաբան. առաջին գիտ. ընկ–յան հիմնադիրը (1885): Աշխ–ները վերաբերում են սիֆիլիսի կլինիկային ու ախտաբանությանը, վեներ. հիվանդությունների բուժմանը:

ՏԱՍԱՆՈՐԴ, ինագույն հարկատեսակ, որը կազմել է ստացված եկամտի տասներորդ մասը: Գանձվել է դեռևս Հին Արևելքում (ռազմ. ավարից վերցված Տ. նվիրաբերել են տաճարներին), միջին դարերում տարածվել է Եվրոպայում՝ որպես եկեղեց. տուրք. իրավ. ուժ է ստացել VI–VIII դդ–ում և պահպանվել է մինչև XVI–XVIII դդ.: Ըստ Մխիթար Գոշի Դատաստանագրքի՝ հողից, ռազմագերիներից, ավարից ևնից գանձվել է Տ.: Տ. գոյություն է ունեցել նաև Կիլիկյան Հայաստանում:

«ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ», **Տասներկու աղյուսակների օրենքներ** (Leges duodecim tabularum), հինհռոմ. օրենքների ժող., ստեղծել են ***դևցեմվիրների*** կոլեգիաները մ. թ. ա. 451–450–ին: Գրառել են քաղաքի հրապարակում կանգնեցված 12 տախտակների վրա (որից էլ՝ անվանումը): Տեքստը չի պահպանվել և վերականգնվում է հռոմեացի գրողների ու իրավաբանների (Ցիցերոն, Գայոս ևն) աշխ–ներում արված հիշատակությունների հիման վրա:

ՏԱՄՆԵՐԿՈՒՄԱՏՆՅԱ Ա.Գ.Ի, բարակ աղու սկզբն. մասը՝ ստամոքսաելքի բացվածքից մինչև բարակ աղի: Երկ–յունը հավասար է ձեռքի մատների տրամագծի 12–ապատիկին (այստեղից՝ անվանումը): Լավ առանձնացած է թոչունների, մարդու և կաթնասուն կենդանիների մոտ: Տ. ա–ի լորձաթաղանթի բջիջներն արտադրում են աղիքահյութ և ***սեկրետին*** հորմոն: Տ. ա–ի մեջ բացվում են ենթաստամոքս. գեղձի և լեղապարկի ծորանները: Հիմն. ախտահարումը խոցն է:

ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ ԲԱՆԱԿ, **Տասնմեկերորդ կարմիր բանակ**, ստեղծվել է Խորհրդ. Ռուսաստանում 1918–ին: Մարտնչել է դենիկինյան զորքերի դեմ Հս. Կովկասում, ապա նահանջել դեպի Աստրախան: 1919–ին 11–րդ և 12–րդ բանակների զորքերի միավորումով կազմվել է 11–րդ առանձին բանակը: Հոկտ. 14–ից Տ. բ. փոխադրվել է Հվ–արլ. (1920–ի հունվ. 16–ից՝ Կովկաս.) ռազմաճակատ: Տ. բ–ի զորամասերը մասնակցել են Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում խորհրդ. իշխանության հաստատմանը, ***Փետրվարյան ապստամբության*** (1921) ճնշմանը: 1921–ին վերանվանվել է Առանձին կովկաս., 1923–ին՝ Կովկաս. կարմրադրոշ բանակ, որի հիման վրա 1935–ին ստեղծվել է Անդրկովկաս. ՋՕ–ն:

ՏԱՄՆՈՐԴԱԿԱՆ ԼՈԳԱՐԻԹՄ, 10 հիմքով լոգարիթմ: a թվի Տ. լ. նշանակում են lga:

ՏԱՄՆՈՐԴԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԿ, կոտորակ, որի հայտարարը 10–ի ամբողջ աստիճան է, օր.՝ 1/10 = 0,1, 909/100 = 9,09:

ՏԱՍՍՈ (Tasso) Տորկվատո (1544–1595), Վերածննդի և բարոկկոյի շրջանի իտալացի բանաստեղծ: Տ–ի գլուխգործոցը՝ «Ազատագրված Երուսաղեմ» («Գոդֆրեդո», հրտ.՝ 1580) պատմ. պոեմը, ինկվիզիցիան (հավատաքննություն) դատապարտել է: 2–րդ հրտ–յունը՝ «Նվաճված Երուսաղեմ» (1587–92) վերնագրով, հագեցած է ուղղափառ–կաթոլիկ ոգով (հայ.՝ 1921): Հեղինակ է նաև «Ամինտա» (բեմ.՝ 1573, հրտ.՝ 1580) հովվերգ. դրամայի, փիլ., գեղագիտ. «Երկխոսություններ» (1578–94) երկի, «Խորհրդածություններ քերթողական արվեստի մասին» (1565–66) աշխ–յան, «Արարչագործված աշխարհ» (հրտ.՝ 1607) կրոն. թեմայով պոեմի, նաև սոնետների, կանցոնների, մադրիգալների:

ՏԱՍՍՈՆԻ (Tassoni) Ալեսանդրո (1565–1635), իտալացի բանաստեղծ: Երգիծ. պոեմի ժանրի հիմնադիրներից («Առևանգված դույլը», հրտ.՝ 1622): Հեղինակ է նաև «Մտորումներ Պետրարկայի բանաստեղծությունների շուրջ» (1609), «Տարաբնույթ մտքեր» (1608–20) տրակտատների ևն:

ՏԱՎԱՐԱԾԱՏԱՓԻ ԴԱՇՏ, **Կարայազի դաշտ**, սեղանաձև սարավանդ Հայկ. լ–աշխարհում՝ Արաքսի վերին հոսանքի ավազանում՝ Բյուրակն և Այծպտկունք լ–զանգվածների միջև: Երկ.՝ 40 *կմ*, լայն.՝ 15 *կմ*, բարձր.՝ 1400–1600 *մ*: Կլիման ցամաքային է, ամառը՝ զով, ձմեռը՝ ցուրտ: Տարեկան տեղումները՝ 500–600 *մմ*: Լանդշաֆտը լ–տափաստանային է:

ՏԱՎԵՌՆԻԵ (Tavernier) Բերտրան (ծ. 1941), ֆրանսիացի կինոռեժ., սցենարիստ: Նկարահանել է «Ժամագործը Սեն Պոլից» (1974), «Փչացած երեխաներ» (1977), «Ուղիղ ռեպորտաժ մահվան մասին» (1979, խորհրդ. էկրանին՝ «Հանցավոր ռեպորտաժ»), «Մեկ շաբաթ արձակուրդ» (1980), «Կիրակի՝ քաղաքից դուրս» (1984), «Կեսգիշերվա շուրջ» (1986), «Արքայադուստր դը Մոնպանսիե» (2010) և այլ ֆիլմեր:

ՏԱՎԻԱՆԻ (Taviani), իտալացի կինոռեժ. եղբայրներ: **Պաոլո Տ.** (ծ. 1931) և **Վիտտորիո Տ.** (ծ. 1929): Ստեղծագործում են համատեղ («Կարիճի նշանի տակ», 1969, «Սուրբ Լորենցոյի գիշերը», 1982, «Քաոս», 1984, ըստ Լ. Պիրանդելլոյի, «Եվ լույսը խավարում լուսավորում է», 1990, «Արտույտի բույնը», 2007, հայկ. էկրանին՝ «Արտույտների ագարակը», «Ռեկամեռոն», 2015, ևն):

«Ոսկե ծիրան» կփ «Փարաջանովյան թալեր» (2007, Երևան), Հայոց ցեղասպանության ճանաչման գործում նշանակալի ավանդ ներդրած անձանց շնորհվող (2007) մրց–ներ:

ՏԱՎԻՂ, լար. կսմիթ. հնագույն երաժշտ. գործիք: Վաղ դրսևորումները՝ մ. թ. ա. III հզ–ամյակում: Պարզագույն տեսակն ունեն գրեթե բոլոր ժողդ–ները: Արդի ոտնակով Տ. ձայնաղարձիչով շրջանակի վրա ունի 46 լար (լարվածքը՝ դիատոնիկ, գյուտարար՝ Ս. Էրար, 1801, Ֆրանսիա):

ՏԱՎԽԵԼԱՋԵ Ալբերտ Նիկիֆորի (1930–2010), վրացի ֆիզիկոս: Վրաստանի ԳԱ (1974, նախագահ՝ 1986–2005–ին), ՌԳԱ (1990) ակադ.: Աշխ–ները վերաբերում են դաշտի քվանտ. տեսությանը և տարր. մասնիկների ֆիզիկային: ԽՍՀՄ (1973), ՌԴ (1998) Պետ., Լենինյան (1988) մրց–ներ:

ՏԱՎՋՅԱՆ Կարապետ, **Դավուդ փաշա, Կարապետ Արթին Դավուդ** (1816–1873), պետ., կրթ., մշակույթի գործիչ, իրավաբան, դիվանագետ: Վիեննայի համալսարանի իրավագիտ. դ–ր, Բեռլինի ԳԱ պատվ. դ–ր: Բեռլինում Օսմ. կայսրության դեսպանության լիազոր կցորդ հյուպատոս՝ Վիեննայում: 1861–68–ին եղել է Լեռն. Լիբանանի ինքնավարության 1–ին կառավարիչ: Հեղինակ է իրավագիտ. աշխ–ների:

Ֆրանսիայի «Պատվո լեգեոն», Իտալիայի «Սբ Գրիգոր» շքանշաններ, Թուրքիայի կառ–յան «Օսմանիե» ժապավեն:

ՏԱՎՐԵՔ (հուն.՝ Tavroi), ըստ անտիկ հեղինակների՝ հնագույն ցեղեր Ղրիմի հվ. մասում (որտեղից՝ Ղրիմի հին՝ «Տավրիկե» անվանումը): II դ–ի վերջին ընկել են

Պոնտոսի թագավորության տիրապետության տակ: Հետագայում Տ. ձուլվել են ալաններին, գոթերին և Լեռն. Ղրիմում բնակություն հաստատած այլ ցեղերի: Գրավոր աղբյուրները Տ–ի գոյությունը հաստատում են մինչև IV դ.:

ՏԱՎՐՈՍ, **Տորոս,** լեռն. համակարգ Փոքրասիական բարձրավանդակի հվ–ում և Հայկ. լ–աշխարհում (Թուրքիայի տարածքում): Սկսվում է Էգեյան ծովի հվ–արլ. ափից, մի քանի ճյուղերով փնջաձև տարածվում մինչև Զագրոսի լ–շղթան: Երկ.՝ ավելի քան 1250 *կմ*, լայն.՝ 50–325 *կմ*, առլգն բարձր.՝ 3726 *մ* (Դեմիր կազըկ լ.՝ Կենտր. Տավրոսում): Առանձնացնում են Արմ. Տ., Կենտր. Տ., Հայկ. Տ., Հս–հայկ. Տ., Ներքին Տ. լեռն. համակարգերը:

ՏԱՎՈՒՇ, գետ ՀՀ Տավուշի մարզում և Ադրբեջանում (Թավուզ), Կուրի աջ վտակը: Սկիզբ է առնում Միափորի լ–շղթայի հս. լանջերից՝ 2000 *մ* բարձր–ից: Երկ.՝ 63 *կմ*, ավազանը՝ 1180 *կմ*^{2} (ՀՀ–ում համապատասխանաբար՝ 29,5 *կմ* և 229 *կմ*^{2}), ջրի միջին ծախսը՝ 0,69 *մ*^{3}/*վ* (Բերդ), հոսքը՝ 22 մլն *մ*^{3}: Գետահովիտը V–աձև է, խոր.՝ 300–400 *մ*: Մնումը հիմնականում ձնաանձրևային է (69 %) և ստորերկրյա (31 %), վարարումը՝ ապրիլ–մայիսին, որի ընթացքում ձևավորվում է տարեկան հոսքի 68 %–ը: Գետի վրա կառուցված է ***Տավուշի ջրամբարը***: Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով:

ՏԱՎՈՒՇ, գավ Ուտիք նահանգ–ում: Հիմնականում համապատասխանում է «Աշխարհացոյց»–ում հիշվող Տուս Քստակ գավ–ին: Տ. անվանաձևով առաջին անգամ հիշատակվում է IX դ–ում: Զբաղեցնում է Հախում, Տավուշ և Խնձորուտ գետերի ավազանները (այժմ ՀՀ Տավուշի մարզի հս. արլ. և Ադրբեջանի Թովուզի և Ղազախի շրջանների տարածքը): Վաղ միջնադարում Տ–ի տարածքը պատկանել է Ուտիքի նախարարներին: IX դ–ի վերջին միացվել է Բագրատունյաց տիրույթներին: 966–ին Տ. հատկացվել է Կյուրիկյաններին: XII դ–ի վերջին և XIII դ–ի Տ–ի զգալի մասը եղել է ***Վահրամյանների իշխանության*** կազմում: XII դ–ի վերջին Տ–ի մի հատվածում առաջացել է Կյուրիկյանների Նոր Բերդի իշխանությունը, որը գոյատևել է մինչև 1230–40–ական թթ.: XII դ–ի վերջին և XIII դ–ում Տ. եղել է հս–արլ. Հայաստանի գիտ. և մշակութ. կենտրոններից: Օտար տիրապետության ժամանակներում (ուշ միջնադար) գավ–ն անվանվել է Շամշադին:

ՏԱՎՈՒՇ, միջնադար. ամրոց Ուտիք նահանգ–ի Տավուշ գավ–ում, համանուն գետի աջ ափին (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզի Բերդ ք–ի հվ–արլ. եզրին): Առաջին անգամ հիշատակվում է X դ–ի սկզբին՝ որպես ***Աշոտ Բ Երկաթի*** կուսակալների նստավայր: X–XI դդ–ում պատկանել է Կյուրիկյաններին, XII–XIII դդ–ում՝ Զաքարյաններին: XIV դ–ի վերջից անտերունչ մնացած Տ. աստիճանաբար ավերվել ու քայքայվել է:


ՏԱՎՈՒՇԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, ***Կյուրիկյանների*** ավատատիր. կազմավորում Ուտիք նահանգ–ի ***Տավուշ*** գավ–ում XII դ–ի 1–ին կեսին: Հիմնադիրն է ***Կյուրիկե Ա***–ի որդի ***Աբաս Ա***–ն, որը, ***Կյուրիկյան թագավորության*** անկումից հետո (1113) տեղափոխվել է ***Տավուշ*** բերդ: Տ. ի. իր կարճատև գոյության ընթացքում ստիպված է եղել պայքարել Գանձակի սելջուկ. ամիրության ոտնձգությունների դեմ: Նվաճվել է 1145–ին:

ՏԱՎՈՒՇԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Միափորի լ–շղթայի հս–արլ. ճյուղավորությունը Տավուշի մարզում: Հախումի և Տավուշի ջրբաժանն է: Երկ.՝ 38 *կմ*: Միջին բարձրյան քայքայված լեռներ են: Հս–արլ–ում աստիճանաբար ցածրանալով՝ ձուլվում է Կուրի հարթավայրին: Լանջերը զառիթափ են՝ կտրտված V–աձև հովիտներով: Լանդշաֆտն անտառային է (գերակշռում է հաճարենին, կան նաև բոխի, թխկի), բարձրադիր գոտում՝ լ–տափաստան.:

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, վտմ ՀՀ–ում: Կազմավորվել է 04.02.1995–ին: Սահմանակից է ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու մարզերին, հս–ում՝ Վրաստանին, արլ–ում՝ Ադրբեջանին: Տարածքը՝ 2704 *կմ*^{2}, բն.՝ 125,5 հզ. (2016): Վարչ. կենտրոնը՝ ***Իջևան***: Ունի 5 քաղաք., 56 գյուղ. համայնք: Գղտ. մարզ է: Անասնաբուծության մեջ առաջատար են տավարաբուծությունը և խոզաբուծությունը, բուսաբուծության մեջ՝ հացահատիկ. բույսերի մշակությունը և խաղողագործությունը: Անցյալում կազմել է Մեծ Հայքի Գուգարք և Ուտիք նահանգ–ների մաս, հետագայում՝ Բագրատունիների, ապա՝ Զաքարյանների տիրույթ: XIII դ–ում ավերել են մոնղոլ–թաթարները: Արլ. Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո կազմել է Ելիզավետպոլի նահգ–ի, 1920–30–ին՝ Հայաստանի Լոռի–Փամբակի ու Դիլիջանի գվո–ների մաս: 1930–ին տարածքում կազմավորվել են Իջևանի և Շամշադինի, 1937–ին՝ Նոյեմբերյանի վարչ. շրջանները: Մարզի ճարտ. նշանավոր հուշարձաններից են Մորոձորո վանքը (V դ.), Կողբի և Տվարոսեղցի (երկուսն էլ՝ VI դ.), Ոսկեպարի Սբ Աստվածածին (VII դ.) եկեղեցիները, Մակարավանքը (X–XIII դդ.), Կապտավանքը (XII դ.), Գոշավանքը (XII–XIII դդ.), Նոր Վարագավանքը (XII–XIII դդ.), Առաքելոց, Սրվեղի (երկուսն էլ՝ XIII դ.) վանքերը, Կիրանց վանքը (XIII դ.), Խորանաշատի վան. համալիրը (XIII դ.), Կայան, Տավուշ (երկուսն էլ՝ X դ.) բերդերը:

ՏԱՎՈՒՇԻ ՋՐԱՄԲԱՐ, Տավուշի մարզում՝ Տավուշ գետի միջին հոսանքում: Շահագործվում է 1975–ից: Մակերեսը՝ 0,45 *կմ*^{2}, միջին խոր.՝ 14,5 *մ*, ջրատարողությունը՝ 5,23 մլն *մ*^{3}, օգտ.՝ 4,5 մլն *մ*^{3}: Հոսքի կարգավորումը սեզոնային է: Պատվարը հողային է՝ ավազակավ. միջուկով: Ոռոգում է Տավուշի մարզի Թովուզ, Մոսեսգեղ, Ներքին Կարմիրաղբյուր և Վերին Կարմիրաղբյուր գ–երի հողատարածքները:

ՏԱՏԱՆՈՂԱԿԱՆ ԿՈՆՏՈՒՐ, փակ էլ. շղթա, կազմված է *C* ունակության կոնդենսատորից և *L* ինդուկտիվության կոճից (նկ.), որտեղ կարող են հարուցվել $\omega = 1/\sqrt{LC}$ հաճախությամբ ***սեփական տատանումներ***. վերջիններս պայմանավորված են կոնդենսատորի էլ. դաշտից էներգիայի վերամղումով կոճի մագնիս. դաշտ և հակառակը: Իրական Տ. կ–ում միշտ կա ***ակտիվ դիմադրություն***, որով պայմանավորված է տատանումների մարումը:



ՏԱՏԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, համակարգեր, որոնցում հավասարակշռության վիճակի փոփոխման հետևանքով առաջանում են ***սեփական տատանումներ***: Տ. հ. լինում են **պասիվական** (առանց էներգիայի կորուստների՝ իդեալական), **ցրող** (տատանումները մարում են էներգիայի կորուստների հետևանքով, օր.՝ ***ճոճանակը***, ***տատանողական կոնտուրը***) և **ակտիվ**, այդ թվում՝ ինքնատատանող. (Էներգիայի կորուստները լրացվում են էներգիայի աղբյուրի հաշվին): Տ. հ. տարբերում են նաև ըստ ***ազատության աստիճանների*** թվի:

ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐ, համակարգի շարժումներ (վիճակի փոփոխություններ), որոնց բնորոշ է այս կամ այն աստիճանի կրկնելիությունը: Առավել տարածված են՝ 1. **մեխանիկական Տ.**, ճոճանակի, կամրջի, նավի, լարի Տ., ձայնի տարածման դեպքում՝ օդի խտության և ճնշման Տ. ևն: 2. **Էլեկտրամագնիսական Տ.**՝ էլ. և մագնիս. դաշտի Տ., որոնք հարուցվում են **տատանողական կոնտուրում**, ծավալ. և բաց ռեզոնատորներում ու տարածվում ալիքների տեսքով՝ տարածության, ալիքատարների մեջ և այլուր: Ըստ ձևի՝ տարբերում են ներդաշնակ., ուղղանկյուն, սղոցաձև և այլ Տ.: Տարբեր բնույթի Տ. ենթարկվում են նույն օրինաչափություններին: Տ. ընկած են բազմաթիվ երևույթների և տեխ. շարժընթացների հիմքում:

ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԻ ՓՈՒԼ, տատանող. շարժընթացի վիճակը ժամանակի որևէ պահի որոշող մեծություն: Սովորաբար էական են միայն ներդաշնակ տարբեր շարժընթացների Տ. փ–երի տարբերությունները: Այս դեպքում Տ. փ. չափվում է անկյուն. միավորներով:

ՏԱՏԱՇ (Tribulus), **սառնենի**, **միջօրածադիկ**, զուգատերևազգիների ընտանիքի միամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 20 տեսակ, ՀՀ–ում՝ 1՝ Կոտայքի, Տավուշի, Գեղարքունիքի, Արմավիրի, Վայոց ձորի և այլ մարզերում: Պտուղը պարունակում է ալկալոիդներ, C վիտամին: Տարածված մոլախոտ է:

ՏԱՏԱՄԿԱԹԶԵՆԻ (Opuntia), **օպունցիա**, կոզինների ընտանիքի փռված կամ կանգնած թփերի, հազվադեպ՝ ծառերի ցեղ: Հայտնի է Տ–ու ավելի քան 200 տեսակ՝ Ամերիկայի (հս. լայն. 56º–ից մինչև Մագելանի նեղուցը) և Գալապագոսյան կղզիների անապատներում և կիսաանապատներում: Ցողունը պարունակում է օսլա, շաքար, սպիտակուց, C վիտամին, անփուշ ձևերն անասունների կեր են:

ՏԱՏԱՄԿԱՓՈՒՇ (Carduus), **կառփուշ**, **կիծուկ**, աստղածաղկազգիների (բարդածաղկավորներ) ընտանիքի միամյա և բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 120 տեսակ՝ Եվրասիայում և Հս. Ամերիկայում, ՀՀ–ում՝ 11՝ բոլոր մարզերում: Զարորակ մոլախոտ է: Որոշ տեսակներ մեղրատու են:

ՏԱՏԱՐԿԱ (Tatarka) Դոմինիկ (1913–1989), սլովակ գրող, հրապարակախոս: Հեղինակ է «Տերտերի հանրապետություն» (1948) հակաֆաշիստ. թեմայով երգիծ. և հետպատերազմ. սլովակյան իրականությանը վերաբերող այլ վեպերի, «Համաձայնողականության դևը» (1956) պամֆլետի, «Ընդդեմ դևերի» (1968) հոդվածաշարի՝ գրված ի պաշտպ–յուն ամբողջատիրության պայմաններում ոտնահարվող մարդասիր. արժեքների: Տ. հալածվել ու մերժվել է, տպագրվել է միայն արտերկրում («Մեն–մենակ ընդդեմ գիշերվա», 1984, հուշագրություններ, ևն):

ՏԱՏԵՈՆ, **Տատեոնք**, **Դիադին**, ավան Այրարատ նահգ–ի Ծաղկոտն գավ–ում՝ Արածանու աջ ափին՝ Բայազետից 33 *կմ* արմ.՝ Վարշակի ջերմուկների շրջա–

նում: Առաջին անգամ հիշատակվում է IV դ–ում: 1555–ի Ամասիայի պայմանագրով Տ. անցել է օսմ. Թուրքիային: Մինչև XIX դ–ի 1–ին քառորդը եղել է Բայազետի փաշայության Դիադինի գվոզ–ի կենտրոնը: XVIII դ–ի վերջի տվյալներով ունեցել է 500 տուն բն., հիմնականում՝ հայեր: 1829–ի Ադրիանուպոլսի պայմանագրից հետո ավանի ու գվոզ–ի հայերի մեծ մասն ստիպված տեղափոխվել է Արլ. Հայաստան: XX դ–ի սկզբին ուներ 15 տուն հայ բն.: Տ–ի վերջին հայ բնակիչները տեղահանվել կամ զոհվել են 1915–ին՝ Մեծ եղեռնի ժամանակ: Ներկայում Աղրի իլի կազմում է:

ՏԱՏԻԱՆՈՒՍ (Tatianus), II դ–ի քրիստ. ջատագով–գրող, հուն. հռետորության և փիլ–յան գիտակ: Տ. Եղել է Հուստինոս Փիլիսոփայի աշակերտը: Հեղինակ է անտիկ շրջանում հայտնի «Ճառ հելլենների դեմ» աշխ–յան: Տ–ին է վերագրվում 4 Ավետարանների համապատում ժող–ը՝ «Դիատեսարոնը»:

ՏԱՏԻԿ, **Դատիկ**, գվո Աղձնիք նինգ–ում: Ընդգրկել է Տատիկ գետի վերին հոսանքի անտառոտ ձորահովիտը: Փոքր լ–շղթայով բաժանվում է Վերին և Ներքին մասերի: Աղձնիքի բդեշխության կազմում մտել է Մեծ Հայքի, իսկ X–XI դդ–ում՝ Վասպուրականի Արծրունյաց թագավորության մեջ: Հետագա դարերում զավթել են օտար նվաճողները (XVI դ–ի 1–ին կեսից՝ օսմ. թուրքերը): Մինչև XIX դ–ի կեսը եղել է Բաղեշի (Բիթլիս) խաներին ենթակա շրջան, XIX դ–ի վերջին և XX դ–ի սկզբին՝ Բիթլիսի վիլայեթի նահիեներից (գյուղախումբ): Մինչև XX դ–ի սկիզբը Տ–ի բնակչության մեծ մասը հայ էր: Տ–ի հայ բնակչությունը զոհվել է Մեծ եղեռնի ժամանակ:

ՏԱՏԻՆՅԱՆ Զավեն Տիգրանի (1926–2005), ռեժ.: ՀԽՍՀ ժող. արտիստ (1979): Պրոֆ. (1979): Օլգա ***Մելիք–Վրթանեսյանի*** ամուսինը: 1953–ից՝ ԵՊՀԹ (1957–59 և 1962–80–ին՝ գլխ. ռեժ.), 1959–62–ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի ռեժ.: Բեմադրություններն աչքի են ընկել մանուկներին մատչելի խորհրդածություններով (Մ. Շաթիրյանի «Երաժշտախումբը», 1957, Կ. Գոցցիի «Ագռավը», 1959, Է. Ռոստանի «Ռոմանտիկները», 1963, Ս. Հարությունյանի «Աղջիկը, Ծիպիլին և Տիմբական», 1979, ևն):

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2002), ՀԹԳՄ «Արտավազդ» մրց. (2003):

ՏԱՏԻՆՅԱՆ Վալերի Գուրգենի (ծ. 1940), ստոմատոլոգ: Բժշկ. գիտ. դ–ր (1986), պրոֆ. (1987): ՀՀ ԲԳԱ (1996) և ՌԲԳԱ (1997) անդամ: ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2012): Հետազոտել է օրգանների և համակարգերի ախտահարումների ազդեցությունը բերանի խոռոչի հիվանդությունների վրա:

Բելգրադի համալսարանի (1993), ԵՊԲՀ (1997) ոսկե, ՀՀ «Մխիթար Հերացի» (2000), ՌԴ Վ. Ի. Վեռնադսկու անվ. (2000) մեդալներ:

ՏԱՏԻՇՎԻԼԻ Գրիգորի Պավելի (1836–1911), վրացի նկարիչ: Մասնակցել է Շ. Ռուսթավելու «Վագրենավորը» պոեմի առաջին հրտ–յան (1888) ձևավորմանը, պատկերազարդել գրքեր (Յ. Գոգեբաշվիլու «Մայրենի լեզու», 1878), ամսագրեր («Նարաթի», «Ջեջիլի» ևն), նկարներ ստեղծել հայկ. «Տարազ», «Աղբյուր», «Մշակ» և այլ հանդեսների ու թերթերի համար: Հրատարակել է «Տետր հայկական նշանագրերի հարթակար տառերի համար» (1889) ալբոմը:

ՏԱՏԻՇՎԻԼԻ Յիսանա Բեժանի (1937–2017), վրացի երգչուհի (սոպրանո): ԽՍՀՄ ժող. արտիստ (1979): 1963–ից՝ Վրաստանի ՕԲԹ–ի մեներգչուհի (Աիդա, Ամներիս՝ Ջ. Վերդիի «Աիդա», Տոսկա՝ Ջ. Պուչչինիի «Տոսկա», ևն):

Վրաստանի Պատվո (2010), նախագահի «Փայլատակում» (2012) շքանշաններ:

ՏԱՏԿԱԼՈ Իգոր Վիկտորի (1924–2003), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1972), պրոֆ. (1973): Աշխ–ները վերաբերում են կլինիկ. ավշաբանության հարցերին: Տ–ի ջանքերով ՀՀ–ում առաջինն է ներդրվել արյան և արյան փոխարինիչների նեռոսկր. փոխներարկման, Բելենկոյի ոչ տեսակահատուկ շիճուկի ներարկման մեթոդներ, մշակվել մաշկ. նույնափոխպատվաստման տարատեսակ մոտեցումներ, առաջարկվել ինքնանույնափոխպատվաստացման համակցված եղանակ:

ԽՍՀՄ Կարմիր դրոշի, «Հայրենական պատերազմի» շքանշաններ, ՌԲԳԱ Ա. Վ. Վիշնևսկու անվ. մեդալ:

ՏԱՏՅԱՆՆԵՐ, ազգ., հաս. և պետ. գործիչների, նշանավոր մտավորականների տոհմ Կ. Պոլսում XVIII–XX դդ–ում: Նախահայրը՝ արհեստավոր **Մահտեսի Առաքել–Տատը** (Տատայան, 1753–1812), Կ. Պոլիս է տեղափոխվել Ակն գվո–ի Ապուչեխ գ–ից: 1795–ին ստացել է ***ամիրայի*** կոչում և նշանակվել Թուրքիայի արքունի վառոդապետ: Այնուհետև շուրջ 75 տարի Տ–ի շառավիղները ղեկավարել են օսմ. զինագործարանները, թղթի արտադր–յունը, բանակի հանդերձավորումը: **Տատյան Սիմեոն ամիրան** (1786–1832) 1826–ին նշանակվել է արքունի վառոդապետ, նույն թվականին իր միջոցներով կառուցել Այա Ստեֆանոյի հայոց եկեղեցին: **Հովհաննես բեյ Տատյանը** (1789–1869) 1842–ին ստանձնել է արքունի վառոդապետի պաշտոնը, 1844–ին կառուցել Մաքրիգյուղի հայկ. եկեղեցին: 1832–ին արքունի վառոդապետ կարգված **Պողոս բեյ Տ.** (1800–1863) նյութ. օգնություն է ցուցաբերել Հարություն ***Սվաճյանին***, Հակոբ ***Պարոնյանին***: **Առաքել բեյ Տ–ի** (1820–1886) օրոք Թուրքիայում ռազմ. նախ–յան ստեղծմամբ վերացվել է վառոդապետության պաշտոնը: **Ներսես բեյ Տ.** (1825–1872) եղել է ճարտ., ***Պալյանների*** հետ բազմաթիվ շենքեր կառուցել Կ. Պոլսում: **Մկրտիչ բեյ Տ.** (1844–1911) տիրապետել է եվրոպ. մի շարք լեզուների, թղթակցել ֆրանս. կենտր. թերթերին: Բարձրաստիճան պաշտոնյաներ **Հարություն փաշա Տ.** (1830–1901) և **Տիրան բեյ Տ.** էական ազդեցություն են ունեցել թուրք. արքունիքում: Ուսումնասիրողները սուլթան Սահմուդի գահակալության շրջանն անվանել են «Տատյան դար»: Տ. նյութ. միջոցներ են տրամադրել Վենետիկի Մխիթարյաններին, ազդեցիկ դեր խաղացել Կ. Պոլսի հայ համայնքի կրոն. և մշակութ. կյանքում: Տ–ի ամառանոցում է ստորագրվել ***Սան Ստեֆանոյի պայմանագիրը*** (1878):

ՏԱՏՐԱԿ (Տեր–Կարապետյան Գեղամ), **Տարոնցի Ասողիկ**, **Մշո Գեղամ** (1865–1918), ազգ–ազատագր. շարժման գործիչ: 1888–94 և 1896–1908–ին՝ Սուշի առաջնորդարանի քարտուղար: 1894–96–ին վարել է Տիգրանակերտի Առաջնորդարանի քարտուղարի պաշտոնը: Երիտթուրք. հեղաշրջումից (1908) հետո ընտրվել է օսմ. խորհրդարանի երեսփոխան (մինչև 1915–ը): Հրատարակվել են Տ–ի «Տարոն աշխարհի պատկերները և պատմվածքները», «Ապրիլյան կոտորածներ» երկերը (1931):

ՏԱՏՐԱԿ (Tussilago), **խոճկորիկ**, աստղածաղկազգիների (բարդածաղկավորներ) ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Ունի 1 տեսակ՝ սովոր. Տ.: Աճում է Եվրասիայի բարեխառն գոտում, Հս. Աֆրիկայում, Հս. Ամերիկայում, ՀՀ–ում՝ Սևանի, Իջևանի, Վայքի, Աշտարակի, Ստեփանավանի և այլ տարածաշրջաններում: Դեղաբույս է: Տերևների թուրմն ունի խորխաբեր, լեղամուղ, քրտնամուղ հատկություն: Կիրառվում է շնչառ. ուղիների հիվանդությունների դեպքում:

ՏԱՏՐԱԿԱՎԱՆՔ, **Տատրաբնակ Սուրբ Աստվածածին վանք**, ճարտ. համալիր Բաղեշից 2 *կմ* հս–արմ.՝ Գոմք գ–ի հսարլ–ում (այժմ՝ Թուրքիայի տարածքում): Պարսպապատ համալիրի կենտրոնում Սբ Աստվածածին կենտրոնագմբեթ եկեղեցին էր (1681), գավիթը, զանգակատունը, նրանց շուրջը՝ երկհարկանի խցերը և տնտ. շինությունները: Ավերվել է Մեծ եղեռնի ժամանակ:

ՏԱՏՐԱԿՆԵՐ (Streptopelia), ***աղավնիների*** ընտանիքի թռչունների մի քանի սեռեր: Երկ.՝ մինչև 30 *սմ*: ՀՀ–ում հանդիպում է 3 տեսակ՝ սովոր., օղակավոր և փոքր Տ.:

ՏԱՏՐԱՆԵՐ, լ–զանգված Լեհաստանում և Չեխիայում, ամենաբարձրը՝ Կարպատներում: Երկ.՝ 65 *կմ*, բարձր.՝ մինչև 2655 *մ* (Գեռլախովսկի Շտիտ լ.): Կազմված է առավելապես գրանիտներից, գրանոդիորիտներից և կրաքարերից: Բնորոշ է ալպ. ռելիեֆը: Կան հնագույն սառցապատման հետքեր, կարստային քարայրեր:

ՏԱՏՐՅԱՆ Աղրինե Հակոբի (1915–2002), գրող, թատերագիր: Հեղինակ է ԵՀՊ–ի մասին «Մարդկային յուշագրութիւններ» շարքի (1945–ին պարբերաբար հրատարակվել է Ստամբուլի «Ժամանակ» օրաթերթում), «Հայրը» (1937), «Մայթերուն վրայ» (1955), «Գեհենի ճամբուն վրայ» (1966), «Չորրորդ մը կը փնտրուի» (1971), «Հեղինակ, կեցիր» (1980) վեպերի, «Յարդի շիւղեր հոսանքին վրայ» (1955), «Պանդոկին սենեակները» (1956) և այլ թատերգությունների:

ՏԱՏՐՅԱՆ Արշամ Գալուստի (1909–1956), գրող, խմբ.: 1948–55–ին՝ ***«Զահակիր»*** (Կահիրե) պարբ–ի խմբ., 1938–ին հրատարակել է «Բանաստեղծին ձայնը» (հ. 1) պարբերագիրքը, որտեղ զետեղված են նաև Տ–ի «Վերադարձ մը» հոգեբ. էսսեն, «Յայտարարութիւն առաջին» հրապարակախոս. երկը:

ՏԱՏՐՅԱՆ, Դադրյան, Վահագն Հակոբի (ծ. 1926), իրավագետ, պատմաբան–ցեղասպանագետ, սոցիոլոգ: Սոցիոլոգիայի դ–ր (1954), պրոֆ. (1970): ՀՀ ԳԱԱ պատվ. դ–ր (1995), արտ. անդամ (1998): 1990–ական թթ–ին՝ Հ. Ֆ. Գուգենհեյմի, 1991–ից՝ Զորյան ինստ–ի (Տորոնտո և Քեմբրիջ) ցեղասպանության հետազոտությունների ծրագրի գիտ. տնօրեն: Տ. համեմատ. ցեղասպանագիտ–յան հիմնադիրներից է: Հեղինակ է «Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով» (հայ., 1995), «Հայոց ցեղասպանության մեջ Գերմանիայի պատասխանատվությունը: Պատ–

մական ապացույցի ստուգաբանությունը» (1996), «Ցեղասպանության երաշխիքը: Թուրք–հայկական հակամարտության գլխավոր բաղադրատարրերը» (երկուսն էլ՝ անգլ.) և այլ մենագրությունների:

ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» շքանշան (2005), ՀՀ «Մովսես Խորենացի» (1998), ՀՀ նախագահի ոսկե (2009) մեդալ, Ֆ. Նանսեն հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2003):

ՏԱՏՐՅԱՆ Վահրամ Արմենակի (1900–1948), գրող, դրամատուրգ: Հեղինակ է պոլսահայ կյանքի վերաբերյալ «Պատուոյ գողը կամ Պախար քեոր ամուսինը» (1926), «Բարև, տէր պապա» (1930) կատակերգությունների, «Գաբիկի արկածները» (1947) պատմվածքների ու վիպակների ժող–ի, «Դէպի անապատ» (1945) հուշագրության, «Մեւ հոգին» (հ. 1–2, 1945) գրքի, հայապահպանության խնդիրներ արծարծող «Նեղլի Պելլա» (1946) վիպաշարի, «Գորդեան հանգոյց» (1949), «Չաւարտուած համանուագ» (1952) դետեկտիվ և երգիծ. վեպերի, նաև թատերգությունների ու պատմվածքների ժող–ների:

ՏԱՏՈՒՐ ԱՐՄԵՆ (Տատուրյան Արմեն Հարությունի, 1920–2008), գրող: Հեղինակ է «Կը սիրեմ աշխարհը» (1948), «Անապատին խորերեն» (1963, ներառում է նաև «Գեղջկական պատկերներ» շարքը) պատմվածքների ժող–ների, որոնց թեման սփյուռքահայ կյանքն է, «Անկրկնելի ապրումներ» (1971, Հայաստան այցելության և տպավորությունների մասին) հուշագրության ևն:

ՏԱՏՈՒՐՅԱՆ Ահարոն Ստեփանի (1887–1965), բանաստեղծ: Հեղինակ է «Մագաղաթներ» (1938), «Պոհեմականք» (1939), «Սոսեաց անտառ» (1949), «Կարմիր Աւետարան» (1959), «Վերջին կաթիլները» և «Հին քերթուածներ» (երկուսն էլ՝ 1971) քնարախոհ. բանաստեղծությունների ժող–ների:

ՏԱՏՈՒՐՅԱՆ Շահե–Զատիկ Սամվելի (1911–1990), հաս. գործիչ, հրապարակախոս: Դիմադրության շարժման հայկ. կազմ–յան ղեկ–ներից: Հայ ազգ. ճակատի հիմնադիրներից: 1942–44–ին՝ Փարիզի «Հայ ճակատ», «Ժողովուրդ» հակաֆաշիստ. թերթերի խմբ.: 1947–ին հայրենադարձել է: 1972–82–ին՝ ՀԽՍՀ հեռուստառադիոպետկոմի փոխնախագահ:

ՏԱՐԱԲՆԱԿԵՑՈՒՄ, 1. իր բնակության վայրից հանելը և ուրիշ տեղ բնակեցնելը: 2. Տնտ. աշխարհագրության մեջ՝ բնակչության տարած. բաշխումը և նրա տարածք. կազմակերպման ձևերը: S. կախված է պատմ. զարգացումից, արտադրող. ուժերի տեղաբաշխումից և բնական պայմաններից:

ՏԱՐԱԳՐՈՍ (Տեր–Վարդանյան Տարագրոս Ստեփանի, 1878–1953), նկարիչ: Գործերից են՝ «Ֆահլաբազար» («Շուկա», 1930), «Գորգանկար» (1939), «ԺԲ դարի խաչքար» ևն: Ուսումնասիրել է Կովկասում պահպանված հայկ. ճարտ. հուշարձանները, մագաղաթե ձեռագրերը, զարդաքանդակները, կիրառ. արվ–ը (ավելի քան 2000 նմուշ), որոնցից էստամպաժ տեխնիկայով կրկնօրինակել է 400 գործ: Աշխատել է Թ. Թորամանյանի, Ն. Մառի (1914–16), Վ. Սուրենյանցի (1917–20) հետ: Հեղինակ է «Հայկական արվեստի տեխնոլոգիան հնագույն շրջանից մինչև մեր օրերը» (1941) գրքի:

ՏԱՐԱԶ, պատմ. տարբեր դարաշրջաններում զանազան երկրներին, ժողդ–ներին, էթնիկ. և տարածք. խմբերին, բնակչության որոշակի շերտերին բնորոշ հագուստ՝ ձևվածքի, գույնի, նյութի տեսակի, արտաքին հարդարանքի (զարդեր, սանրվածք, բեղեր, դաջվածք ևն) առանձնահատկություններով: Ըստ Ստրաբոնի՝ հայերը կրել են խույր, ապարոշ, գդակ, հագել թեզանիքավոր պարեգոտ և վարտիք: XX դ–ի սկզբից հայկ. S–ները դուրս են եկել առօրեական գործածությունից:

«ՏԱՐԱԶ», գր–գեղ., հաս. պարբ. (1890–1919, Թիֆլիս): Խմբ–հրտ.՝ Տիգրան Նազարյան: Մինչև 1900–ը՝ *«Աղբիւր»*–ի հավելված:

ՏԱՐԱԽՉՅԱՆ Գուրգեն Մարտիրոսի (Մաշտի Գուրգեն, 1897–1943), ոսկերիչ: Գյումրիի ոսկերչ. ավանդույթներով ստեղծած նրա զարդերը, արծաթե գավաթները, ծխախոտատուփերը, ծխամորճերը ևն աչքի են ընկնում կատարման բարձր վարպետությամբ: Ե. Չարենցն իր «Հիշողություններ Երևանի ուղղիչ տնից» (1927) երկում հիշատակել է S–ին՝ որպես «առաջնակարգ վարպետ–ոսկերիչ»:

ՏԱՐԱԽՉՅԱՆ Վարդուշ Սարգսի (1894–1980), խմբ., կուս. գործիչ: 1927–29 և 1934–37–ին՝ «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրի գլխ. խմբ.: ՀԽՍՀ կենտգործկոմի անդամ:

ՏԱՐԱԾԱԴԻՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ, երբ օբյեկտը լուսանկարահանում են 2 (կամ ավելի) կետերից և որի արդյունքում լուսանյութի (սովորաբար՝ լուսաժապավենի) վրա ստանում են 2 պատկեր: Դրանք կազմում են, այսպես կոչված, տարածագույց: Վերջինի պատկերը աջ և ձախ աչքերով առանձին–առանձին դիտելիս առաջանում է պատկերի ծավալ. էֆեկտը: S. լ. կատարում են հատուկ կամ սովոր. (բայց լրացուցիչ կցորդներով հանդերձված) տարածադիտ. լուսանկարչ. խցիկներով:


ՏԱՐԱԾԱԿԱՆ ԱՐՎԵՍՏՆԵՐ, պլաստիկ արվեստներ, հասկացություն, որը միավորում է արվ–ի այն տեսակները, որոնց ստեղծագործությունները տարածության մեջ են և չեն փոփոխվում ժամանակի ընթացքում: Տարբերում են պատկեր. (գեղանկարչություն, քանդ–յուն, գրաֆիկա, լուսանկարչություն) և ոչ պատկեր. (ճարտ–յուն, դեկորատիվ–կիրառ. արվ., ձևաստեղծում գեղ.) S. ա–ի տեսակները:

ՏԱՐԱԾԱԿԱՆ ԶԱՆԳՎԱԾՈՒԹՅՈՒՆ (Բ–զույգություն), *տարրական մասնիկների* կամ նրանց համակարգերի զույգությունը՝ *տարածական ինվերսիայի* գործողության նկատմամբ: Պահպանվում է բոլոր փոխազդեցություններում՝ բացի թույլ փոխազդեցություններից:

ՏԱՐԱԾԱԿԱՆ ԻԶՈՄԵՐԻԱ, ստերեոիզոմերիա, քիմ. միացությունների իզոմերիայի տեսակներից: Պայմանավորված է տարածության մեջ ատոմների դասավորվածության տարբերություններով:

ՏԱՐԱԾԱԿԱՆ ԻՆՎԵՐՍԻԱ (Բ), մասնիկների տարած. կոորդինատների նշանների փոփոխությունը հակառակի՝ $x \to -x$, $y \to -y$, $z \to -z$. ստացվում է մասնիկների կոորդինատների հայել. անդրադարձման դեպքում՝ փոխուղղահայաց 3 հարթությունների նկատմամբ, որոնք անցնում են կոորդինատների սկզբնակետով: Ուժեղ և էլեկտրամագնիս. փոխազդեցություններով պայմանավորված ֆիզ. շարժընթացները S. ի–ի դեպքում չեն փոխվում (համաչափ են S. ի–ի նկատմամբ). այս համաչափությանը համապատասխանում է պահպանվող մեծություն՝ ***տարածական զույգությունը***: Թույլ փոխազդեցություններով պայմանավորված շարժընթացները տարած. զույգությունը փոխվում է:

ՏԱՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (շինմեխանիկայում), համակարգ (կրող կառուցվածք), որի տարրերի համաչափության առանցքները և արտաքին ուժերը, նեբառայալ հենարան. ռեակցիաները, տարբեր հարթությունների վրա են: Հիմն. տեսակներն են՝ բարակապատ (թաղանթներ, կամարներ, գմբեթներ), ձողային (կայմեր, էլեկտրահաղորդման հենաբաններ ևն), հոծ (հիմքեր, հենապատեր), կախովի S. հ–եր (նկ.):



Տարածական համակարգերի օրինակներ. ա. ֆերմա (ձողավոր գմբեթ), բ. շրջանակ

ՏԱՐԱԾԱԿԱՆ ՃՐՈՒՄ (դիսպերսիա), միջավայրի բեկման ցուցչի (կամ *դիէլեկտրիկական թափանցելիության*) կախումը $\vec{k}$ ալիք. վեկտորից. պայմանավորված է էլ. ինդուկցիայի և էլ. դաշտի լարվածության միջև եղած կապի ոչ տեղայնությամբ: Դա հանգեցնում է բևեռացման հարթության պտտմանը, խորանարդ. բյուրեղների անիզոտրոպությանը և այլ երևույթների:

ՏԱՐԱԾԱԿԱՆ ՔԻՄԻԱ, *ստերեոքիմիա*, ուսումնասիրում է մոլ–ների տարած. կառուցվածքը և այդ կառուցվածքի ազդեցությունը ֆիզ. հատկությունների (ստատիկ S.), նաև ռեակցիաների ուղղության ու արագության (դինամիկ S.) վրա:

ՏԱՐԱԾԱԿԱՆՈՐԵՆ ԿԱՐԳԱՎՈՐՎԱԾ ՊՈԼԻՄԵՐՆԵՐ, բարձրմոլ. միացություններ, որոնց գծային մակրոմոլ–ները բաղկացած են օրինաչափորեն իրար հաջորդող միատեսակ կամ տարբեր տարած. կոնֆիգուրացիա ունեցող տարր. օղակներից: Յուրաքանչյուր օղակ պարունակում է հիմն. շղթայի մեջ մտնող ածխածնի առնվազն մեկ ասիմետրիկ ատոմ:

ՏԱՐԱԾՇՐՋԱՆ, 1. չափերով նշանակալի տարածք (ջրատարածք), որը պարտադիր չէ, որ լինի որևէ տարածք. բաժանման համակարգի կարգաբան. միավոր (օր.՝ Սյունիքի S.): 2. **S. բնական**, չափերով նշանակալի տարածք, որն ունի բնական պայմանների որոշակի ընդհանրություն (օր.՝ Արարատյան դաշտը):

«ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀ», քաղ., տնտ., պատմ., կրոն., մշակութ. գիտավերլուծ. հանդես (2010–ից, Երևան, հոդվածները՝ հայ., ռուս., անգլ.): Քաղ. հետազոտությունների ինստ–ի հրտ–յուն: Խմբ–ներ՝ Հովհաննես Ասրյան, Լևոն Անդրեասյան:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, երկրբ–յան բաժին. ուսումնասիրում է երկրակեղևի առանձին շրջանների (*տարածաշրջանների*) երկրբ. կառուցվածքը, զարգացման պատմությու-

նը, նյութ. կազմության, ֆիզ. դաշտերի և օգտ. հանածոների բաշխման օրինաչափությունները:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, միջազգ. կազմ–յուններ, որոնց անդամակցում են առանձին մայրցամաքների, նրանց մասերի կամ խոշոր *տարածաշրջանների* պետությունները (օր.՝ Աֆրիկ. միություն):

ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ (մաթ.), օբյեկտների բազմություն, որոնց միջև եղած հարաբերություններն իրենց կառուցվածքով նման են սովոր. տարած. հարաբերություններին, օր.՝ շրջակայքի, հեռ–յան նման: Պատմականորեն առաջին և կարևորագույն մաթ. S. *էվկլիդեսյան տարածությունն* է:

ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿ, փիլ. կատեգորիաներ: **Տարածությունը** նյութ. օբյեկտների և գործընթացների գոյության ձև է, որը բնորոշում է նյութ. համակարգերի կառուցվածքայնությունը և տարաձգությունը, **ժամանակը** օբյեկտների և գործընթացների հաջորդ. փոփոխությունն է և ձևը: S. և ժ. ունեն օբյեկտիվ բնույթ, անքակտելիորեն կապված են միմյանց հետ, անվերջ են: Ժամանակի համընդհ. հատկություններն են տևողությունը, անդարձելիությունը, տարածության հատկությունները՝ տարաձգությունը, ընդհատության և անընդհատության միասնությունը:

ՏԱՐԱԾՈՒՆ ԹՈՒՆԱՎՈՐ ԽՊԻՊ, **բազեդովյան հիվանդություն**, ներզատ. հիվանդություն՝ պայմանավորված վահանագեղձի ֆունկցիայի ուժեղացմամբ, թիրօքսինի ավելցուկ. արտադր–յամբ, որը հանգեցնում է գերթունավորության (հիպերտոքսիկոզի): Հիմն. ախտանշաններն են խպիպը, արտաականությունը, հաճախազարկությունը, շաքար. փոխանակության խանգարումը, նիհարումը:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՋՐԵՐ, **տարածքային ծով**, պետության ցամաք. կամ կղզիների տարածքին հարող և այդ տարածքի բաղկացուցիչ մասը կազմող ծով. գոտի: S. ջ–ի իրավ. կարգավիճակը 1–ին անգամ ընդունվել է տարածք. ծովի և հարող գոտու մասին ՄԱԿ–ի Ժնևյան 1–ին համաժողովում (1958): ՄԱԿ–ի 3–րդ համաժողովում (1982) ընդունված համաձայնագրի համաձայն՝ S. ջ–ում (ինչպես նաև համապատասխան օդ. տարածքում, ծովի հատակում և ընդերքում) տվյալ պետության իրավունքը գերակա է միջազգ. իրավունքի շրջանակներում:

ՏԱՐԱՄԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶՈՒԳԱՄԻՏՈՒԹՅՈՒՆ, մաթ. հասկացություններ, որոնցով անվանում են տվյալ փոփոխ. մեծության (հաջորդականության, շարքի ևն) վերջավոր սահման ունենալը (զուգամետ) կամ չունենալը (տարամետ):

ՏԱՐԱՆՏԵԼԱ (իտալ.՝ tarantella), արագ տեմպով իտալ. ժող. պար՝ կիթառի, տամբուրինի, կաստանիետների նվագակցությամբ, երբեմն՝ երգով: Երաժշտ. չափը՝ 6/8 և 3/8: XIX դ–ում S. կոնցերտ. գործիք. պիես էր (Ֆ. Լիստ, Մ. Ի. Գլինկա, Պ. Ի. Չայկովսկի և ուր.):

ՏԱՐԱՆՏԻՆՈ (Tarantino) Քվենտին (ծ. 1963), ամերիկացի կինոռեժ., սցենարիստ, դերասան: Նկարահանել է թրիլլերներ, որտեղ հանդես է եկել նաև որպես դերասան և սցենարիստ [«Կատաղած շներ», 1992, «Քրեական ընթերցվածք», 1994, «Անփառունակ սրիկաներ» (2009, Է. Ռոտի հետ) և այլ ֆիլմեր]: «Իսկական սեր» (1993), «Ի ծնե մարդասպաններ» (1994), «Մայրամուտից մինչև արևածագ» (1996, գլխ. դերակատարներից) կինոնկարների սցենարիստն է: «Օսկար» մրց. (1995, 2013):

ՏԱՐԱՆՏՈ (Taranto), ք–նվինգստ Իտալիայի հվ–ում, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 189 հզ. (2010):

ՏԱՐԱՆՅՈՒՄ, **տրանզիտ** (լատ.՝ transitus – անցում), ուղևորների և բեռների փոխադրում մի երկրից մյուսը՝ 3–րդ երկրի տարածքով, հաճախ իրականացվում է մի քանի երկրների տարածքներով, լինում է նաև երկրի ներսում՝ մի մարզից՝ մյուսը:

ՏԱՐԱՍԵՌ ԿԱՏԱԼԻԶ, արագության փոփոխություն կամ քիմ. ռեակցիայի հարուցում ռեագենտների և տարասեռ կատալիզորդի փոխազդեցությամբ: S. կ–ի վրա է հիմնված արդ–յան նավթավերամշակման, նավթաքիմ. և քիմ. բնագավառների տեխնոլոգիաների մոտ 90 %–ը:

ՏԱՐԱՄԵՎԻՉ Լեոնտի (Լև, մոտ 1659–1710), ուկրաինացի փորագրիչ: Դիմանկարները (Վ. Վ. Գոլիցինի), Կիև–Պեչորյան «Վարք սրբոց»–ի (1702) համար ստեղծած պղնձափորագրություններն աչքի են ընկնում ռեալիստ. հատկանիշներով:

ՏԱՐԱՍԵՎԻՉ Լև Ալեքսանդրովիչ (1868–1927), ռուս. մանրէաբան և ախտաբան: Ուկր. ԽՍՀ ԳԱ ակադ. (1926): Շիճուկների և վակցինաների հսկման կայանի հիմնադիր (1918) Մոսկվայում (այժմ՝ Տ–ի անվ. բժշկակենսաբ. պատրաստուկների չափորոշման և հսկման ԳՀԻ), Ազգ. առողջապ–յան պետ. ինստ–ի կազմակերպիչ (1920): Աշխ–ները վերաբերում են մանրէաբանությանը, իմունաբանությանը, վակցինանականխարգելմանը:

ՏԱՐԱՄՍԿՈՆԵՐ (ինքնանվանումը՝ պուրեպեչա), հնդկացի ժողդ Մեքսիկայում: Ընդհ. թիվը՝ 60 հզ. (2010): Լեզուն՝ տարբասկո (պուրեպեչա): Հավատացյալները հիմնականում կաթոլիկ են:

ՏԱՐԱՍՈՎ Ալլա Կոնստանտինովնա (1898–1973), ռուս. դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1937): Սոց. աշխ. հերոս (1973): 1924–ից՝ ՄԳԱԹ–ի դերասանուհի: Դերակատարումներին (Նեգինա՝ Ա. Ն. Օստրովսկու «Տաղանդներ և երկրպագուներ», Աննա՝ «Աննա Կարենինա»՝ ըստ Լ. Ն. Տոլստոյի, Մաշա՝ Ա. Պ. Չեխովի «Երեք քույր», ևն) բնորոշ են զգացմունքայնությունը, քնար. ոգեշնչվածությունը: Նկարահանվել է «Ամպրոպ», «Պետրոս I», «Անմեղ մեղավորներ» և այլ ֆիլմերում:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1946–ին՝ կրկնակի, 1947, 1949):

ՏԱՐԱՍՈՎՆԵՐ, ռուս մարզիկ–մարզիչներ՝ հայր և դուստր: **Անատոլի Վլադիմիրովիչ S.** (1918–1995), տափօղակով հոկեյի ռուս. դպրոցի հիմնադիրներից: ԽՍՀՄ ս. վ. վ. (1949), վ. մ. (1957): ԽՍՀՄ չեմպիոն (1948–50): 1948–78–ին (ընդմիջումներով)՝ ԽՍՀՄ հավաքականի մարզիչ: **Տատյանա Անատոլևնա S.** (ծ. 1947), գեղասահքի վ. մ. (1975): Վ. Վ. *Կրայնևի* կինը: Տատյանա Անատոլևնայի սաներն արժանացել են (1975–2005) 7 ձմեռ. օլիմպ. խաղերի, 17 աշխարհի, 18 Եվրոպայի առաջնությունների ոսկե մեդալների: Հեղինակ է «Գեղեցկուհին և հրեշը» (2001) գրքի:

ՏԱՐԱՍՈՒՆՆԵՐ, **հետերոտրոֆներ** (< *հետերո*... և trophe – սնունդ), տարասուն օրգանիզմներ, որոնք սնուցման համար օգտագործում են պատրաստի օրգ. նյութեր: S. են մարդը, բոլոր կենդանիները, որոշ բույսեր, բակտերիաների մեծ մասը, սնկերը:

ՏԱՐԱՏՈՐԿԻՆ Գեորգի Գեորգևիչ (1945–2017), ռուս. դերասան: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1984): 1966–ից՝ Լենինգրադի պատանի հանդիսատեսի, 1974–ից՝ Մոսկվայի Մոսսովետի անվ. թատրոնների դերասան (Իվան՝ «Կարամազով եղբայրներ»՝ ըստ Ֆ. Մ. Դոստոևսկու, Ալեքսանդր Բլոկ՝ Ա. Պ. Շտեյնի «Վարկած», ևն): Նկարահանվել է կինոյում («Ոճիր և պատիժ», «Սրտաբուխ գործեր», «Անհայտ մարդու պատմածը» ևն):

ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄ, **դիֆերենցացում** (ֆրանս.՝ differentiation, < լատ. differentia – տարբերություն), ամբողջի բաժանումը տարբեր մասերի, ձևերի, աստիճանների, օր.՝ հաս–յան քաղաքացիության, լեզուների, բջջի ևն S.: 1. (Կենսբ.) *ֆիլոգենեզում*՝ օրգանիզմների խմբի մասնատումը 2 կամ մի քանի խմբերի *էվոլյուցիայի* ընթացքում: 2. *Օնտոգենեզում*՝ օրգանիզմի անհատ. զարգացման ընթացքում սաղմի սկզբնապես միանման, չտարբերակված բջիջների կերպափոխումը հյուսվածքների և օրգանների մասնագիտացված բջիջների:

ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆՆԵՐ, զինծառայողների նշաններ, որոնք ամրացվում են զինծառայողների համազգեստին զինվ. կոչումները, զինված ուժերի տեսակը, զորատեսակը, պաշտոնը ևն ցույց տալու համար: Ժամանակակից բանակներում S. են գլխարկների, ուսադիրների, մերակների, թևքերի և այլ նշանները:

ՏԱՐԲԵՐԻՉ, **դիսկրիմինանտ**, $ax^2 + bx + c = 0$ **հավասարման**, $b^2 - 4ac = D$ արտահայտությունը, որի նշանով դատում են այդ հավասարման իրական արմատների ($D \geq 0$) գոյության մասին:

ՏԱՐԳԱԼԱԿՏՈՒԻԱ (Platalea leucorodia), *իբիսների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, հազվագյուտ: Բնադրում է գաղութներով՝ եղեգի բուսուտներում, գետերի ստորին ավազանում, լճերում: Մարմնի երկ.՝ 80–90, թևերի բացվածքը՝ 115–130 *սմ*, կ. զ.՝ 1,7 *կգ*: Կտուցը երկար է, գդալաձև: Սնվում է միջատներով, խեցգետնակերպներով, մանր ձկներով և երկկենցաղներով:

2004–ին Արարատյան դաշտի ջրաճահճ. թռչունների խոշորագույն գաղութում հայտնաբերվել են S–ի բներ: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՏԱՐԴԻՈ, **Թարդիո** (Tardieu), Անդրե (1876–1945), ֆրանսիացի քաղ. և պետ. գործիչ: 1929–30–ին՝ վարչապետ, 1932–ին՝ վարչապետ և ԱԳ նախարար: Հեղինակ է դիվանագիտ–յան պատմության վերաբերյալ գրքերի:

«ՏԱՐԵԳԻՐ», հաս–քաղ., մշակութ. պարբերաթերթ (2001–10–ին, Երևան, մինչև 2004–ը և 2009–10–ին՝ էլեկտրոն. օրաթերթ): Հիմնադիր–խմբ.՝ Վասակ *Դարբինյան*:

«ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ», տարեթերթ (1799–1802, Վենետիկ): ՄՄ հրտ–յուն: Խմբ.՝ Ղուկաս *Ինճիճյան*: Ժամանակագր. առումով 2–րդ հայ. պարբ–ն է՝ *«Ազդարար»*–ից հետո:

ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ, *պատմագրության* ձև, պատմ. անցքերի հաջորդ. գրառումը՝ ըստ տարիների: Ծագել է հնագույն ժամանակներում: Հին Հռոմում հայտնի է մ. թ. ա. V դ–ից *աննալներ* անունով: Միջ–

նադարում S-ներն առավելապես հայտնի էին ***ժամանակագրություն*** անվանումով:

Հայաստանում S-ները՝ «պատմությունները», երևան են եկել XII–XIII դդ-ում (Մատթեոս Ուռհայեցի, Սամվել Անեցի, Սմբատ Սպարապետ, Հեթում Պատմիչ և ուր.), տարածվել են XIV–XVI դդ-ում: Սակայն, ի տարբերություն պատմիչների երկերի, S-ներում դեպքերը շարադրված են առանց փոխադարձ կապի ու քննության, բացակայում են դրանք ամբողջացնելու միտումը, հեղինակի վերաբերմունքը: Այդուհանդերձ, հայ. S-ները կարևոր սկզբնաղբյուրներ են այդ ժամանակաշրջանների Հայաստանի պատմության ուսումնասիրման համար: S. գրառողները կոչվում են **տարեգիրներ:**

ՏԱՐԵԵՎ, Եվգենի Միխայլովիչ (1895–1986), ռուս. թերապևտ, գիտ. դպրոցի հիմնադիր: ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1948): Սոց. աշխ. հերոս (1965): Մ. Մ. ***Տարևի*** որդին: Աշխ-ները վերաբերում են երիկամների և լյարդի ախտաբանությանը, կոլագենային հիվանդություններին ևն: ԽՍՀՄ Պետ. (1946, 1983), Լենինյան (1974) մրց-ներ:

ՏԱՐԵԵՎ, Միխայիլ Միխայլովիչ (1867–1934), ռուս. կրոն. փիլ., ուղղափառ աստվածաբան: Ե. Մ. ***Տարևի*** հայրը: Հեղինակ է «Քրիստոնեության հիմունքները» (հ. 1–5, 1908–10), «Կոլեկտիվի սահմանը» (1912), «Սոցիալիզմ (Բարոյականություն և տնտեսություն)» (1913), «Քրիստոնեական փիլիսոփայություն» (1917) և այլ աշխ-ների:

ՏԱՐԵԿԱՆ ՕՂԱԿՆԵՐ, **տարեշերտեր**, 1. բույսերի բնափայտի աճման շերտեր, որոնք առաջանում են նրանց արմատ և ցողուն առաջացնող հյուսվածքի (կամբիում) գործունեության տարեշրջ. պարբերականության արդյունքում: Հնարավորություն է տալիս որոշելու բույսի տարիքը, անցյալի կլիմաները, նաև հաստատելու հնէաբան. գտածոների տարիքը: 2. Կենդանիների որոշ հյուսվածքներում ձևավորվող և երկարատև պահպանվող գոյացություններ (օր.՝ ձկների թեփուկների վրա), որոնք հնարավորություն են տալիս որոշելու առանձնյակի տարիքը: Արտացոլում են հյուսվածքների աճման արագության տարեշրջ. փոփոխությունները:

ՏԱՐԵՆՏԵԼՅԱՆ, **Տարանտելյան**, Միհրան (1889–1980), ջութակահար, մանկավարժ: 1938-ից նվագել է Փարիզի “Schola cantorum” լար. քառյակում և նվագախմբում, 1950-ից՝ քաղաքապետարանի արտիստ. միության նվագախմբում, զբաղվել մանկավարժությամբ, արժանացել “Officier d’académie” գեղ. պատվո նշանի (1951): Հայ. թարգմանել ու հրատարակել է Ա. Լավինյակի «Երաժշտական դաստիարակություն» աշխ-ը (1921): Հեղինակ է դաշնամուրի սոնատի, ջութակի ու դաշնամուրի ֆուգաների, կոնցերտինոյի, երգերի և այլ գործերի:

ՏԱՐԻ, Արեգակի շուրջը Երկրի պտտման պարբերությամբ որոշվող ժամանակամիջոց: Աստղագիտ-յան մեջ տարբերում են՝ 1. **սիդերական (աստղային) S.**, համապատասխանում է Արեգակի տեսանելի լրիվ պտույտին երկնոլորտով՝ աստղերի նկատմամբ (365,2564 միջին արեգակն. օր): 2. **Արևադարձային S.**, գարնան. գիշերահավասարի կետով իրական Արեգակի կենտրոնի 2 հաջորդաբար անցման ժամանակահատվածը (365,2422 օր): 3. **Անոմալիական S.**, Արեգակի տեսանելի երկրակենտրոն ուղեծրի երկրամերձ կետով Արեգակի կենտրոնի 2 հաջորդ. անցման ժամանակահատվածը (365, 2596 օր): 4. **Դրակոնյան S.**, խավարածրի վրա Լուսնի ուղեծրի նույն հանգույցով Արեգակի 2 հաջորդ. անցման ժամանակահատվածը (346,6200 օր): Բոլոր S-ների տևողությունները բերված են 1900 թ-ի համար: 5. **Օրացուցային S.**, կազմում է 365 օր՝ հասարակ, և 366 օր՝ նահանջ S-ների համար: 6. **Լուսնային S.**, տևողությունը՝ 12 լուսն. սինոդական ամիս (միջինը՝ 354, 367 օր):

ՏԱՐԻՔԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, հոգեբ-յան բնագավառ. ուսումնասիրում է մարդու հոգեկանի զարգացումը և նրա առանձնահատկությունները տարիքից կախված: Զևավորվել է XX դ-ի սկզբին՝ ընդգրկելով մանկան հոգեբ-յունը, չափահաս մարդու անհատ. հոգեբ-յան զարգացումը և գերոնտոհոգեբ-յունը (ծերության հոգեբ-յուն):

ՏԱՐԽԱՆՈՎ (Մոսկվին) Միխայիլ Միխայլովիչ (1877–1948), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1937): Ի. Մ. ***Մոսկվինի*** եղբայրը: 1922-ից՝ ՄԳԱԹ-ի դերասան (Գրադոբոև՝ Ա. Ն. Օստրովսկու «Ջերմ սիրտ», Սորակևիչ՝ «Մեռած հոգիներ»՝ ըստ Ն. Վ. Գոգոլի, Սեմյոնով՝ «Մարդկանց մեջ»՝ ըստ Մ. Գորկու, ևն): Դերակատարումներն առանձնացել են երգիծ., կոմիկ. ուժով, դերասան. համարձակ արտահայտչամիջոցներով: Նկարահանվել է «Ամպրոպ», «Պետրոս I» և այլ ֆիլմերում:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1943):

ՏԱՐԿԱՎԱՆ (Tanacetum), **մեղվամուշկ**, աստղածաղկազգիների (բարդածաղկավորներ) ընտանիքի բազմամյա բուրավետ խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 50 տեսակ Հս. կիսագնդում, ՀՀ-ում՝ 18՝ գրեթե բոլոր մարզերում: Սովորական S. կամ վայրած արոսենին դեղաբույս է (լեղամուղ): Դեղազարդիչ է, մեղրատու: ՀՀ-ում աճում է կոչիի S., որը հազվագյուտ տեսակ է՝ գրանցված ՀՀ Կարմիր գրքում:

ՏԱՐԿՈՎՍԿԻ Անդրեյ Արսենևիչ (1932–1986), ռուս. կինոռեժ.: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1980): Ա. Ա. ***Տարկովսկու*** որդին: Նկարահանել է «Իվանի մանկությունը» (1962), «Անդրեյ Ռուբլյով» (1966, էկրանին՝ 1971-ից), «Սոլյարիս» (1972), «Հայելի» (1975), «Մտալկեր» (1980), «Նոստալգիա» (1983, Իտալիա), «Զոհաբերություն» (1986, Շվեդիա) և այլ ֆիլմեր, որոնք համակված են մարդկային կյանքի իմաստի մասին փիլ. խոհերով, արտացոլում են կրոնաբարոյական խնդիրներ:

Լենինյան մրց. (1990, հետմահու):

ՏԱՐԿՈՎՍԿԻ Արսենի Ալեքսանդրովիչ (1907–1989), ռուս բանաստեղծ, թարգմանիչ: Ա. Ա. ***Տարկովսկու*** հայրը: Հեղինակ է «Ձյունից առաջ» (1962), «Երկրին՝ երկրայինը» (1966), «Լրաբեր» (1969), «Կախարդական սարեր» (1978), «Ձմեռային օր» (1980), «Պատանեկությունից մինչև ծերություն» (1987) քնար. բանաստեղծությունների ժող-ների: Կատարել է նաև թարգմ-յուններ:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1989, հետմահու):

ՏԱՐՈ (Taro), նվիկազգիների ընտանիքի բազմամյա արևադարձ. բույս: Պալարները խոշոր են (մինչև 4 *կգ*, պարունակում է 25–27 % օսլա), օգտագործում են սննդի մեջ, աճեցնում են Արլ. կիսագնդի արևադարձներում և մերձարևադարձներում:

ՏԱՐՈՆ, Տարօն, գվո Տուրուբերան նահգում՝ Արածանի գետի միջին հոսանքի և նրա Մեղրագետ վտակի ավազանում: Հս-ից սահմանակից էր Արշամունիք և Հարք, հվ-ից՝ Ասպակունիք և Խույթ, արլ-ից՝ Բզնունիք, արմ-ից՝ Ծոփքի Հաշտյանք, հվ-արմ-ից՝ Աղձնիքի Սանասունք գվո-ներին: Գլխ. կենտրոնի՝ Մուշ ք-ի անունով գվո-ը կոչվել է նաև «Մշոյ աշխարհ» կամ «Մշոյ երկիր»: Մ. թ. ա. IX–VI դդ-ում S. եղել է ***Ուրարտուի*** կազմում: 428-ից հետո դարձել է ***Մամիկոնյանների*** ժառանգ. սեփականությունը: Հայաստանի 591-ի բաժանմամբ S. անցել է բյուզ. գերիշխանության ներքո: 885-ից այն միավորվել է Բագրատունյաց թագավորությանը (տես ***Տարոնի իշխանություն***): XIII–XVI դդ-ում S. ընկել է թաթար-մոնղ. և թուրքմ. ցեղերի տիրապետության տակ: 1535-ի և 1639-ի թուրք-պարսկ. պայմանագրերով S. անցել է Օսմ. սուլթանությանը: XIX դ-ի վերջին և XX դ-ի սկզբին S. մտնում էր Բիթլիսի վիլայեթի մեջ՝ հիմնականում կազմելով Մշո սանջակի համանուն գվոկ-ը, որի շուրջ 140 բնակավայրերում ապրում էր 94–95 հզ. հայ բնակչություն: 1915-ին՝ Մեծ եղեռնի ժամանակ, S-ի հայերը դիմել են ինքնապաշտպ-յան (տես ***Մուշի գոյամարտ 1915***). նրանց մեծ մասը զոհվել է, փրկվածները տեղափոխվել են Արլ. Հայաստան կամ հեռացել տարբեր երկրներ:

ՏԱՐՈՆԻ ԴԱՇՏ, տես *Մշո դաշտ*:

ՏԱՐՈՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, Տարոնի Բագրատունիների իշխանություն, ավատ. իշխանապետություն միջնադար. Հայաստանում: Հիմնադրել է Հայոց իշխան Բագարատ Բագրատունին 826-ին: ***Աշոտ Ա***-ի թագավոր հռչակվելուց (885) հետո, պահպանելով ինքնուրույնությունը, մտել է Բագրատունյաց թագավորության մեջ: Իշխան Աշոտի մահից (967) հետո Բյուզ. կայսրությունը ռազմակալել է S. ի.: Աշոտի որդիներ Գրիգորը և Բագարատը, հարկադրված, կայսրությանն են զիջել Տարոնը և փոխարենը կալվածներ ստացել Բյուզանդիայում:

«ՏԱՐՈՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ», հայ միջնադար. ժող. վեպ: Պահպանվել է ***Հովհան Մամիկոնյանի***, մասամբ՝ ***Սեբեոսի*** (գրառել-խմբագրել են) պատմագր. երկերում: Բաղկացած է Մամիկոնյան իշխանների մասին բանահյուս. ծագում ունեցող բազմաթիվ վիպ. զրույցներից, ավանդություններից ու երգերից: Բովանդակությունն աղերսներ ունի ***«Պարսից պատերազմ»***-ի հետ, որի կարևոր բաղադրիչը կազմող Մուշեղի վեպը VII–VIII դդ-ում տեղայնացել է Տարոնում: Պատմատիպարան. առումով «S. պ.» օղակ է «Պարսից պատերազմ»-ի և ***«Սասնա ծռեր»***-ի միջև:

ՏԱՐՈՆՅԱՆ Էդվարդ (1896–1960), գրող, մանկավարժ: 1942–57-ին՝ Բեյրութի Սբ Նշան վարժարանի տնօրեն: Հեղինակ է «Մանկապատում» (1952), «Համասփիւռ» (1959) պատմվածքների ժող-ների:

ՏԱՐՈՆՑԻ (Սիվսիսյան) Սողոմոն Սահակի (1904–1971), բանաստեղծ, թարգմանիչ: ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1965): ***Բենսևի*** որդին: Հեղինակ է «Անապատաններ» (1926) պոեմաշարի, «Առավոտ» (1930), «Սերունդների երգը» (1933), «Դարերի լեգենդը» (1934), «Ռազմի շեփոր» (1941), «Պատերազմ» (1942), «Ամպրոպից հետո» (1948), «Մեծ առօրյա» (1953),

«Ավելի լույս» (1958), «Ոսկեդար» (1960) և այլ բանաստեղծությունների, «Ադա-վիա» (1936), «Ջրույց արևի տակ» (1959), «Նովելներ» (1962) արձակ գործերի ժող–ների, «Հայրեններ», «Դավթի երգը» (1946), «Սիամանթո և Խջեզարե» ժող. ստեղծագործությունների մշակումների, նաև բալլադների, դյուցազնավեպերի, սոնետների: Կատարել է թարգմ–յուններ անտիկ շրջանի, Արևելքի և ռուս բանաս–տեղծների գործերից:


ՏԱՐՊԱՆ, վայրի ձի, *ձիեր* սեռի կաթ–նասուն: Մնդավի բարձր.՝ մինչև 136 *սմ*: Ապրել է Եվրոպայի տափաստան. և անտառատափաստան. գոտիներում: Ունեցել է 2 ենթատեսակ՝ տափաստան. և անտառ., որոնք վերացել են XIX դ–ում, հիմնականում՝ նրանց ապրելավայրերի յուրացման պատճառով:

ՏԱՐՍԱՅՃԻ ՕՐԲԵԼՅԱՆ (ծ. թ. անհտ–1290), Սյունիքի իշխանապետ՝ 1273–ից: *Ստեփանոս Օրբելյանի* հայրը: Կնության է առել *Հասան–Ջալալ Դոլայի* դուստր Մինա Խաթունին և ռազմ. դաշինք հաս–տատել Խաչենի իշխանության հետ: Վրաց Դեմետրե թագավորը 1284–ին S. O–ին նշանակել է իր տերության աթաբեկ (գահի խնամակալ) և ամիրսպասալար (սպարապետ): S. O. Սյունիքի վանքերն ազատել է մոնղ. հարկերից, նորոգել խարխլվածները:

ՏԱՐՍԿԻ (Tarski) Ալֆրեդ (1902–1983), լեհ տրամաբան և մաթեմատիկոս: S. տրա–մար. իմաստաբանության՝ որպես դեդուկ–տիվ տեսության հիմնադիրն է: 1939–ից՝ ԱՄՆ–ում: Աշխ–ները վերաբերում են մոդելների տրամաբանա–հանրահաշվ. տեսությանը, պրեդիկատների հաշվի մե–թոդների ուսումնասիրությանը:

ՏԱՐՍՈՆ, Տարսոս, Տարսուս, Թարսիս (լատ.՝ Tarsus, Tharsis), ք. Դաշտ. Կիլի–կիայում՝ Կյուղնոս (Տարսոն) գետի գույգ ափերին: Ըստ պեղածոների (1934–38)՝ S. մ. թ. ա. VI–IV հզ–ամյակներում եղել է նեոլիթ. բնակավայր, մ. թ. ա. III–II հզ–ամ–յակներում՝ բրոնզի մշակման կենտրոն և ամրացված բք: Մ. թ. ա. VII դ–ում ընկել է Ասորեստանի, մ. թ. ա. VI–IV դդ–ում՝ Աքեմենյան Իրանի, այնուհետև՝ Սելևկ–յանների տիրապետության տակ: Մ. թ. ա. 80–70–ական թթ–ին S. եղել է *Տիգրան Բ* Մեծի տերության, ապա՝ Հռոմ. կայսրութ–յան մեջ: VII դ–ի վերջին S. նվաճել են արաբները: 973–ից եղել է հայկ. արքե–պիսկոպոսության կենտրոն: 1040–80–ին մտել է հայ իշխան *Աբղարիր Արծրունու* տիրույթների մեջ: XII դ–ի վերջին քաոր–դին S. միավորվել է Կիլիկյան Հայաս–տանին: Կիլիկիայում հայկ. պետության անկումից (1375) հետո S., ընկնելով նախ՝ Եգիպտոսի արաբ. սուլթանության, իսկ 1487–ից՝ օսմ. սուլթանության տիրապե–տության տակ, հետզհետե ավերվել է: XX դ–ի սկզբին S–ում ապրում էր 3–4 հզ. հայ: 1909–ի թուրք. կոտորածների ժամանակ՝ ապրիլի 16–17–ին, S–ում ոչնչացվել է ավե–լի քան 500 հայ: Մյուսները բռնագաղթել կամ կոտորվել են 1915–ին՝ Մեծ եղեռնի ժամանակ:

ՏԱՐՎԱ ԵՂԱՆԱԿՆԵՐ, երկնակամարում Արեգակի տեսանելի դիրքին համապա–տասխան՝ տարվա բաժանումը 4 ժա–մանակաշրջանի (գարուն, ամառ, աշուն, ձմեռ): Հս. և Հվ. կիսագնդերում S. ե. իրար հակառակ են: S. ե–ի առաջացման և հերթափոխության պատճառը Երկրի պտտման առանցքի թեքությունն է (66°33′) ուղեծրային հարթության նկատմամբ:



ՏԱՐՏԱԼԻԱ (Tartaglia) Նիկոլո (մոտ 1499–1557), իտալացի գիտնական: Աշխ–ները վերաբերում են մաթ–ին, մեխանիկային, ջրաբանութ–ան, գեոդեզիային, ամրաշի–նությանը ևն: S–ի անունը (Ջ. *Կարդանոյի* անվան հետ) կապված է խորանարդ. հավասարումների լուծման եղանակի մշակման հետ:

ՏԱՐՏԱԿՈՎՍԿԻ Վլադիմիր Ալեքսանդրո–վիչ (ծ. 1932), ռուս. քիմիկոս: ՌԳԱ ակադ. (1992): Աշխ–ները վերաբերում են նիտ–րա– և տարացիկլային միացություններին, արդ. օրգ. սինթեզին:

Լենինյան (1976), Ա. Մ. Բուտլերո–վի անվ. (1967), Դեմիդովյան (1999), «Տրիումֆ» (2003) մրց–ներ:

ՏԱՐՏԱՐՈՍ, անդունդ, անդրերկրյա աշ–խարհի խորխորատը հին հուն. դից–յան մեջ: Հնագույն առասպելներում S. զետեղ–վում է *Հադեսի* թագավորությունից նույն–քան ներքև, որքան երկիրը՝ երկնքից, և իբր պարփակված է եռաշերտ խավարով ու պղնձե երեք պարսպով, որոնց շուրջ հավետ մոլեգնում են փոթորիկները: S–ի մասին որոշ պատկերացումներ քրիս–տոնեությունը մտցրել է *դժոխք* հասկա–գության մեջ:

ՏԱՐՏՈՒ (Tartu), ք. Էստոնիայում՝ Էմայիգի գետի ափին: Բն.՝ 98,4 հզ. (2010): Հայտնի է 1030–ից՝ Յուրև անունով: 1224–1558–ին, 1582–1656–ին և 1661–1893–ին կոչվել է Դերպտ (Դորպատ): S–ի համալսարա–նում սովորել են Խաչատուր *Աբովյանը* (1830–35) և հայ հայտնի մի շարք այլ գործիչներ:

ՏԱՐՏՈՒԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Դորպատի համալսարան, Յուրևի համալսարան, հիմնադրվել է 1632–ին Էստոնիայի Տար–տու ք–ում, կոչվել է Academia Custaviana՝ 9–ամյա ուսուցմամբ: Գործել է մինչև 1710–ը, վերաբացվել է 1802–ին և կոչվել Դոր–պատի, 1893–ից՝ Յուրևի, 1918–ից՝ S. հ.: 2016–ին ուներ ավելի քան 17 հզ. ուսանող:

1830–ից S. հ–ում սովորել են հայ ուսա–նողներ Խ. Աբովյանը (S. հ–ում կա նրա անվան լսարան), Ս. Նազարյանը, Գ. Դո–դոխյանը, Ռ. և Ք. Պատկանյանները և ուր.: XIX դ–ի 1–ին կեսին համալսարանի տպարանում տպագրվել են հայ. գրքեր, այդ թվում՝ Խ. Աբովյանի «Վերք Հայաս–տանի» վեպը (1858):

ՏԱՐՐ, էլեմենտ (< լատ. elementum – տարր, նախասկըզբ. նյութ), բարդ ամբողջը կազ–մող բաղադրամասեր: Տես նաև *Քիմիա–կան տարրեր*:

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ, ՀՀ–ում 12–ամյա ընդհ. միջնակարգ կրթության 1–ին աս–տիճանը՝ I–IV դասարաններ: Նպատակը սովորողի մտավոր հոգևոր ու ֆիզ. ունա–կությունների, լեզվամտածողության, գրա–գիտ–յան, տրամաբ–յան հիմքերի և աշխ. նախն. հմտությունների ձևավորումն է: S. դ. ընդունվում են 6 տարեկանից:

Հայաստանում առաջին S. դ–ները հիմնադրվել են IV–V դդ–ում (տես *Նա–խամեսրոպյան դպրոցներ*, *Մեսրոպյան դպրոցներ*), հետագայում գործել են եկեղեցիներին կից՝ «ծխական դպրոց» անվամբ: ՀԽՍՀ–ում՝ 1920–ական թթ–ից՝ պետ. անվճար դպրոցներ:

ՏԱՐՐԱԿԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԼԻՑՔ (e), դրական կամ բացաս. նվզգն էլ. լիցք, որի մեծությունը՝ $e \approx 4{,}8 \cdot 10^{-10}$ ՍԳՎԷ միավորի կամ $1{,}6 \cdot 10^{-19}$ *Կլ*: Գրեթե բոլոր լիցքավորված *տարրական մասնիկներն* ունեն «^{+}e» կամ «^{-}e» լիցք (բացառություն են որոշ ռեզոնանսները՝ e–ի բազմապա–տիկ լիցքով): Կոտորակ. էլ. լիցքերով մասնիկներ չեն դիտվել, սակայն *ուժեղ փոխազդեցությունների* ժամանակակից տեսության մեջ՝ *քվանտային քրոմոդի–նամիկայում*, ենթադրվում է քվարկների $\frac{1}{3}e$–ին բազմապատիկ լիցքով մասնիկնե–րի գոյությունը:

ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՆԵՐ, սկզբնա–յին, անբաժանելի մասնիկներ, որոնցից կազմված է *մատերիան*: Յուրաքանչյուր S. մ. (բացառությամբ իսկական չեզոք մասնիկների) ունի իր *հակամասնիկը*: Հայտնաբերվել են ավելի քան 350 S. մ.՝ ներառյալ հակամասնիկները: Դրանցից կայուն են *ֆոտոնը* և *մյուոնը, նեյտրի–նոն, էլեկտրոնը, պրոտոնը* և նրանց հակամասնիկները: Մնացած S. մ. ինք–նակամ տրոհվում են սկսած $\approx 10^{-3}$ *վ*–ից (ազատ նեյտրոնի համար) մինչև $\approx 10^{-22}$ – 10^{-24} *վ*–ում (ռեզոնանսների համար): S. մ. դասակարգվում են՝ ըստ նրանց մասնակցած հիմնարար փոխազդեցութ–յունների տիպերի և մի շարք ֆիզ. մե–ծությունների պահպանման օրենքների: Առանձին խումբ է կազմում ֆոտոնը: ½ սպինով մասնիկները, որոնք չեն մաս–նակցում *ուժեղ փոխազդեցություններին* և օժտված են պահպանվող ներքին բնու–թագրով՝ լեպտոնային լիցքով, կազմում են *լեպտոնների* խումբը: Բոլոր հիմնա–բար, ներառյալ ուժեղ, փոխազդեցութ–յուններին մասնակցող S. մ. անվանում են *հադրոններ*: Դրանց բնորոշ ուժեղ փոխազդեցություններին հատուկ են ամենամեծ թվով պահպանվող մեծութ–յունները (պահպանման մեծություններ), այդ թվում՝ նրանց համար բնորոշները՝ *բարիոնային լիցքը, տարօրինակութ–յունը, իզոտոպային սպինը*, «հմայքը»: Հադրոնները բաժանվում են *բարիոնների* և *մեզոնների*: Ժամանակակից պատկե–րացումներով՝ հադրոններն ունեն բարդ ներքին կառուցվածք. բարիոնները բաղ–կացած են 3 քվարկից, մեզոնները՝ քվար–կից և հակաքվարկից: S. մ–ի բախումից տեղի են ունենում բոլոր այն ամենա–հնարավոր փոխարկումները, որոնք չեն արգելվում *պահպանման օրենքներով*:

Դեռևս չի ստեղծվել S. մ–ի այնպիսի հետևողական տեսություն, որը կանխա–տեսեր նրանց զանգվածների հնարավոր արժեքները և ներքին այլ բնութագրեր:

ՏԱՐՐԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ, ռեակցիա–ներ, որոնք հնարավոր չէ ներկայացնել ավելի պարզ քիմ. փոխարկումներով: Բարդ քիմ. ռեակցիաների բաղադրիչ մա–սերն են: S. ռ–ում, որպես կանոն, խզվում կամ առաջանում են ոչ ավելի քան 1–2 միջատոմ. կապեր:

ՏԱՐՐԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ, ֆունկ–ցիաների դաս, որոնց մեջ մտնում են բազմանդամները, ռացիոնալ, ցուցչ. լո–

գարիթմ., եռանկյունաչափ. և հակադարձ եռանկյունաչափ. ֆունկցիաները, նաև վերը թվարկածներից վերջավոր թվով թվաբ. գործողություններով և տեղադրումներով (բարդ ֆունկցիա կազմելով) ստացվող ֆունկցիաները:

ՏԱՐՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ, ստեքիոմետրիա (< հին հուն. stoixeon – «տարր» և metreo – չափություն), օրենքների, կանոնների և տերմինների համակարգ, որոնցով հիմնավորվում են քիմ. ռեակցիաներում նյութի բաղադրության և զանգվածների (գազերի համար՝ ծավալների) միջև քանակ. հարաբերությունների հաշվարկները:

ՏԱՐՐԵՐԻ ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ, քիմ. տարրերի՝ ըստ իրենց երկրաքիմ. նմանության՝ որոշակի բնական համակարգերում կուտակման հատկանիշի դասակարգում: 1-ին դասակարգումը մշակել է Վ. Գոլդշմիդտը 1922-ին: Ա. Պերելմանի դասակարգումը հիմնված է երկրակեղևում տարրերի տեղաշարժի առանձնահատկությունների վրա: Առանձնացված են տարրերի 4 երկրաքիմ. խմբեր՝ լիթոֆիլ (լեռնապարամետ), խալկոֆիլ (պղնձամետ), սիդերոֆիլ (երկաթամետ) և արմոֆիլ (գոլորշամետ):

ՏԱՐՐԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ Դ. Ի. Մենդելեևի, քիմ. տարրերի դասակարգումը գրաֆիկորեն՝ ընդունված Դ. Ի. Մենդելեևի պարբեր. օրենքի (բացահայտվել է 1869-ին և հաստատում է տարրերի հատկությունների փոփոխությունների պարբերականությունը՝ նրանց ատոմների միջուկների լիցքերի մեծացմամբ) հիման վրա: Z միջուկի լիցքը (հավասար է համակարգում տարրի ատոմ. կարգահամարին) միանշանակ բնութագրում է քիմ. տարրը: Տարրերը դասավորված են ըստ Z-ի աճման և առաջացնում են պարբերություններ: Տարրերի քիմ. և մի շարք ֆիզ. հատկությունների փոփոխությունների պարբերականությունը պայմանավորված է ատոմների արտաքին էլեկտրոն. թաղանթների կառուցվածքի պարբեր. փոփոխությամբ: Տ. պ. հ-ի գիտ. բացատրությունը տրվել է քվանտ. մեխանիկայի հիման վրա: Առավել գործածական են աղյուսակի կարճ և երկար ձևերը: Կարճ ձևը (Դ. Ի. Մենդելեևի կազմած աղյուսակը) ընդգրկում է 8 խումբ, ենթախմբեր և պարբերություններ, երկար ձևը (առաջարկված 1989-ին)՝ 18 խումբ, 8 պարբերություն և չի պարունակում ենթախմբեր (2017-ին պարունակում էր 118 տարր): Միևնույն խմբի բոլոր տարրերը (բացի H-ից և He-ից) ունեն միևնույն արտաքին օքսիդացման աստիճանը որոշող օրբիտալներ (լանթանիդները և ակտինիդները պայմանականորեն): Պարբեր. օրենքը և Տ. պ. հ. ընկած են նյութի կառուցվածքի մասին ժամանակակից ուսմունքի հիմքում և ունեն կարևոր նշանակություն քիմ. բազմազան նյութերի ուսումնասիրության և նոր տարրերի սինթեզման գործում:

ՏԱՐՔՎԻՆԻՈՍ ԳՈՌՈՋ Լուկիոս (Lucius Tarquinius Superbus), հռոմ. ավանդության համաձայն՝ Հին Հռոմի վերջին՝ 7-րդ թագավորը՝ մ. թ. ա. 534/533–510/509-ին: Վտարվել է Հռոմից:

ՏԱՐՔՎԻՆԻՈՍ ՀԻՆ Լուկիոս (Lucius Tarquinius Priscus), **Տարքվինիոս Ավագ**, հռոմ. ավանդության համաձայն՝ Հին Հռոմի 5-րդ թագավորը՝ մ. թ. ա. 616/615–578/577-ին (ծագումով՝ Էտրուսկ): Հայտնի է սաբինների և լատինների դեմ մղած հաջող պատերազմներով:

ՏԱՐՕՐԻՆԱԿ ՄԱՄՆԻԿՆԵՐ, 0-ից տարբեր *տարօրինակությամբ* մասնիկներ: S. մ. են *K–մեզոնները*, *հիպերոնները* և բազմաթիվ *ռեզոնանսները*:

«ՏԱՐՕՐԻՆԱԿ ՊԱՏԵՐԱԶՄ», եզրույթ, որ ընդորոշում է Արմ. ռազմաճակատի իրադրությունը ԵՀՊ-ի 1-ին 9 ամիսների (1939-ի սեպտ–1940-ի մայիս) ընթացքում, երբ դեմ դիմաց տեղակայված անգլո-ֆրանս. և գերմ. զորքերը ռազմ. գործողություններ չեն իրականացրել: Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառ-յուններն ակնկալում էին հաշտություն կնքել Գերմանիայի հետ, իսկ գերմ. բանակը պատրաստվում էր պատերազմի Արմ. Եվրոպայի երկրների դեմ:

ՏԱՐՕՐԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ (s), ամբողջ (զրո, դրական կամ բացաս.) քվանտ. թիվ, հադրոնների յուրահատուկ բնութագրիչ: Մասնիկի և հակամասնիկի S-ները նշանով հակադիր են: $s \neq 0$-ով մասնիկներին անվանում են տարօրինակ: S. պահպանվում է ուժեղ և էլեկտրամագնիս. փոխազդեցություններով պայմանավորված շարժընթացներում, բայց խախտվում է (փոխվում է 1-ով) թույլ փոխազդեցություններով պայմանավորված շարժընթացներում:

ՏԱՈՒՍԵՆ (Tausen) Հանս (1494–1561), դանիական ռեֆորմացիայի գործիչ («Դանիական Լյութեր»), լյութերականության քարոզիչ: Դանիացի բողոքականների «հավատի խորհրդանիշների» («43 կոպենհագենյան հոդվածներ») հիմն. հեղինակը:

ՏԱՈՒՄՈՆ Վլադիմիր Օտտոնովիչ (1894–1946), ռուս. մանրէաբան և բույսերի ֆիզիոլոգ, կենսաէներգետիկայի հիմնադիրներից: Հետազոտել է մանրէների երկրբ. գործունեության ու բնական նավթի քայքայման մեջ նրանց ունեցած դերը:

ՏԱՈՒՏ (Taut) Բրունո (1880–1938), գերմանացի ճարտ.: Շին-յան մեջ կիրառել է ապակի և բետոն, ճարտ-յան մեջ նպաստել գույնի տարածմանը («Ապակե տաղավար»-ը Քյոլնի «Գերմանական վերկբունդ» ցուցահանդեսում, 1914):

ՏԱՈՒՏՈՄԵՐԻԱ (հուն.՝ tautos – նույն ինքը և meros – բաժին, մաս), դարձելի *իզոմերիա*, որի ժամանակ փոխադարձորեն փոխակերպելի կառուցվածք. իզոմերները (տաուտոմերներ) շարժուն հավասարակշռության մեջ են:

«ՏԱՒՐՈՍ», քաղ., գր., քննադատ. շաբաթաթերթ (1898, Վառնա): Խմբ-ներ՝ Հ. Քրությոն, Տիգրան Ճգնավորյան:

«ՏԱՒՐՈՍ», քաղ., տնտ., հաս. օրաթերթ (1919–20, Ադանա, 1920-ին՝ «Ազատ Տաւրոս»): Հնչակյան կուս-յան Կիլիկիայի շրջանի պաշտոնաթերթ: Խմբ-ներ՝ Անդրանիկ Կեոնճյան, Վահան Ժամկոչյան, Սեդրակ Շահենց, Արիս Գալֆայան, Մարգար Զազիկյան, Սարգիս Տխրունի:

ՏԱՓԱԿ ՈՐԴԵՐ (Platelminthes), անողնաշարների տիպ: Մարմինը (երկ.՝ 0,1 *մմ*–18 *մ*) տափակացած է: Կան ծով., քաղցրահամ ջրերի և ցամաք. ձևեր, ազատ ապրողներ և մակաբույծներ: Դասերն են՝ թարթչավոր որդեր, միածնային (մոնոգենետիկ) ծծող որդեր, տրեմատոդներ, ժապավենաձև որդեր ևն: Հայտնի է մոտ 12 500 տեսակ:

ՏԱՓԱԿԱԹԱՓՈՒԹՅՈՒՆ, ներբանի կամարների իջեցում (հարթեցում): Երկար քայլելիս և կանգնելիս առաջացնում է արագ հոգնածություն և ցավեր: Բուժումը՝ մերսում, հատուկ մարմնամարզություն, կոշիկի մեջ հատուկ ներդրակների (սուպինատոր) տեղադրում կամ օրթոպեդիկ կոշիկ, ծանր դեպքերում՝ վիրահատություն:

ՏԱՓԱԿԱՁԿՆԵՐ (Buthus lunatus), **կամբալաներ**, *ոսկրային ձկների* կարգ: Երկ.՝ 5 *սմ*–4,7 *մ*, կ. զ.՝ 330 *կգ*: Հայտնի է մոտ 570 տեսակ, հիմնականում՝ Համաշխ. օվկ-ում (բացի Անտարկտիկայից): Արդյունագործ. արժեքավոր ձուկ է, այդ թվում՝ սպիտակակեղև և սև վահանաձկները, ծով. տափակաձուկը:

ՏԱՓԱԿԱՄԱՐՄԻՆՆԵՐ (Cucujidae), 1. *բզեզների* ընտանիք: Մարմինը տափակացած է, երկ.՝ 1–6 (հազվադեպ՝ մինչև 30) *մմ*: Հայտնի է 1100 տեսակ: Գիշատիչներ են կամ ամենակեր, ապրում են ծառերի կեղևի տակ, չոր ընափայտի մեջ, մրջնանոցներում, օրգ. մնացորդներում, երբեմն՝ ալյուրի, ձավարի, չոր մրգերի մեջ (օր.՝ սուրինամյան ալրակերը): 2. Տզերի ընտանիք. մոտ են ոստայնատզերին:

ՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ԱՐԾԻՎ (Aquila nipalensis), *ճուռակների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 67–77, թևերի բացվածքը՝ 174–200 *սմ*, կ. զ.՝ 3–5 *կգ*: Խոշոր գիշատիչ թռչուն է: Մնվում է մանր կաթնասուններով (հիմնականում՝ դաշտամկներ), թռչուններով, միջատներով: Օգտակար է. ոչնչացնում է կրծողներին: 1995-ից թվաքանակը նվազում է: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ԱՐՋԱՄՈՒԿ (Marmota bobak), **բայրակ**, արջամկներ սեռի կաթնասուն կենդանի: Մարմնի երկ.՝ մինչև 60 *սմ*: Սակավաթիվ է: Պահպանվում է:

ՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ԱՐՏՈՒՅՏ (Melanocorypha calandra), *արտույտների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող: Մարմնի երկ.՝ 18–19, թևերի բացվածքը՝ 34–42 *սմ*, կ. զ.՝ 40–45 *գ*: Կտուցը մեծ է, մարմնի ընդհ. փետրածածկը՝ մոխրագույն երանգով: Մնվում է սերմերով, անողնաշարաներով:

ՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ԲՈՒՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, բուս. ծածկույթի լանդշաֆտ. տիպ՝ ՀՀ-ում տարածված է միջինլեռն. գոտում (1300–2200 *մ*) և գբաղեցնում է ՀՀ տարածքի գրեթե կեսը: Տ. բ-յամբ են պատված ՀՀ բոլոր խոշոր լ-զանգվածների միջին գոտիները, սարավանդներն ու գետահովիտները (Լոռու, Շիրակի, Սյունիքի): Առանձնացվում է Տ. բ-յան 20 ենթատիպ:

ՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ԾԻԾԱՌԱԿԱՏՑԱՐ (Glareola nordmanni), *ծիծառակտցարների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, հազվագյուտ: Մարմնի երկ.՝ 25, թևերի բացվածքը՝ 60–68 *սմ*, կ. զ.՝ 87–105 *գ*: Մնվում է անողնաշարներով, միջատներով: ՀՀ-ում հանդիպում է Արարատյան դաշտի ձկնաբուծ. լճակների մերձակայքում, չոր, աղքատ բուսականությամբ տարածքներում: Պահպանվում է:

ՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ԿԱՏՈՒ (Felis libiyca), **մանուլ**, կատվազգիների ընտանիքի *կատուներ* սեռի կաթնասուն կենդանի: ՀՀ-ում հանդիպում է լ-տափաստաններում, նախալեռն. կիսաանապատներում, Արաքս գետի հովտում: Մարմնի երկ.՝ 53–70 *սմ*, պոչինը՝ 23–35 *սմ*, կ. զ.՝ 3,4–5 *կգ*: Մեջքը մոխրագույն է՝ սև բծերով, պոչին՝ 6–8 սև օղակներ: Մնվում է ավազա-

մկներով, դաշտամկներով, թռչուններով, նրանց ձվերով, երկկենցաղներով: Ունի լավ հոտառություն և լսողություն: Մորթին սակավարժեք է: Որսն արգելված է: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ՀՈՂՄԱՎԱՐ ԲԱԶԵ (Falco naumanni), *բազեների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 29–32, թևերի բացվածքը՝ 58–72 *սմ*, կ. զ.՝ 100–200 *գ*: Բարեկազմ է, մագիլները՝ սպիտակ: Ապրում է կիսաանապատներում, լ–տափաստաններում՝ ժայռերի հարևանությամբ: Օգտակար է. ոչնչացնում է գող. վնասատուներին:

ՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ՃՈՒՌԱԿ (Buteo rufinus), *ճուռակների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 50–65, թևերի բացվածքը՝ 126–148 *սմ*, կ. զ.՝ 0,8–1 *կգ*: ՀՀ–ում հանդիպում է լ–տափաստաններում, ժայռերի վրա, գող. տարածքներում: Մնվում է կրծողներով, սողուններով, այլ մանր կենդանիներով: Կարիք ունի համակողմանի պահպանության: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ՄԿՆԱՃՈՒՌԱԿ (Circus macrourus), *ճուռակների* ընտանիքի գիշատիչ թռչուն: Կլոր տարի չվահյուր է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 40–48, թևերի բացվածքը՝ 95–120 *սմ*, կ. զ.՝ 300–500 *գ*: Տարածված է Արարատյան դաշտից մինչև լ–տափաստաններ, լայնարձակ հարթավայր. հովիտներ: Մնվում է մանր կաթնասուններով, թռչուններով, սողուններով: Կրծողների թվաքանակի կենսբ. կարգավորող է:

ՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ՍՊԻՏԱԿ ՍՈՒՆԿ (Pleurotus eryngii), **կայսերական սունկ**, բազիդիավոր սնկերի ականջասնկայինների ընտանիքի տեսակ: ՀՀ–ում հանդիպում է Երևանի շրջակայքում՝ հովանոցավոր բույսերի արմատների կամ չորացած ցողունների վրա՝ գարնանը (1300–1800 *մ* բարձր–յան վրա): Քիչ տարածված ուտելի սունկ է:

ՏԱՓՈԼՈՒՐ (athyrus), **ճպուռ**, բակլազգիների (թիթեռնածաղկավորներ) ընտանիքի միամյա և բազմամյա խոտաբույսերի, հիմնականում՝ թփերի ցեղ: Հայտնի է 100–ից ավելի տեսակ՝ Եվրասիայում, Աֆրիկայում, ՀՀ–ում՝ 16 (18)՝ գրեթե բոլոր մարզերում: Սիդերալ և կեր. բույս է: Խոտի բերքատվությունը՝ 50, հատիկինը՝ 15–20 *գ/հա*: Մեղրատու է:

ՏԱՔԱՐՅՈՒՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ, **հոմոյոթերմ կենդանիներ** (< հուն. homoios – նման, միատեսակ և therme – ջերմություն), կենդանիներ, որոնք պահպանում են մարմնի հարաբեր. հաստատուն ջերմաստիճանը՝ շրջակա միջավայրի ջերմաստիճանի փոփոխությունների դեպքերում: Տ. կ. են թռչունները և կաթնասունները:

ՏԱՔԴԵՂ (Capcicum), **ծիծակ, պղպեղ, պատիճապղպեղ**, մորմազգիների ընտանիքի բազմամյա (մշակության մեջ՝ միամյա) բանջարաբույսերի ցեղ: Հայտնի է 4 տեսակ, ՀՀ–ում մշակության մեջ՝ 1՝ Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և այլ մարզերում: Կան կծու և քաղցր, մանր, խոշորապտուղ, միջահաս, ուշահաս սորտեր: Տ. պարունակում է շաքարներ, սպիտակուցներ, C, B_1, B_2, P վիտամիններ, կարոտին:

ՏԱՔԱՆԵՐ, որսորդ. շների ցեղախումբ, օգտագործում են գորշուկի, աղվեսի, ենոտաշան որսի համար: Բուծել են Գերմանիայում XVIII դ–ում: Տարբերում են կոկամազ, երկարամազ և կոշտամազ Տ.:

ՏԱՔԻ..., **տաքսո**..., բարդ բառերի մաս. ցույց է տալիս կարգին, հարմարանքին, սարքվածքին վերաբերելը:

ՏԱՔՍԻԴԵՐՄԻԱ (< *տաքսի...* և derma – մաշկ, կաշի), կենդանիների խրտվիլակների պատրաստման եղանակ: Սովորաբար կաշվի մեջ լցնում են փափուկ նյութ (խծուծ, բամբակ) կամ կաշին հագցնում են կենդանու կոշտ մոդելի վրա:

ՏԱՔՍԻՄՆԵՐ, օրգանիզմների (նախակենդանիներ, ցածրակարգ բույսեր), առանձին բջիջների կամ նրանց օրգանելների ուղղորդված շարժումները միակողմանի ազդող խթանիչի՝ լույսի (լուսատաքսիս), ջերմաստիճանի (ջերմատաքսիս), քիմ. նյութերի (քեմոտաքսիս), նաև թթվածնի (աերոտաքսիս), խոնավության (հիդրոտաքսիս) ազդեցության ներքո:

ՏԱՔՍՈՆՈՄԻԱ (< *տաքսո...* և հուն.՝ nomos – օրենք), ուսմունք իրականության ստորակարգ. կառուցվածք բարդ կազմակերպված բնազավառների (օրգ. աշխարհ, աշխարհագրության, երկրբ–յան, լեզվաբ–յան, ազգագրության և այլ օբյեկտներ) դասակարգման ու համակարգման վերաբերյալ: «Տ.» եզրույթը (առաջարկել է շվեյցարացի բուսաբան Օ. *Դեկանդոլը* 1813–ին) երկար ժամանակ օգտագործվել է որպես կարգաբանության հոմանիշ: 1960–70–ական թթ–ին առաջացել է Տ., որպես կարգաբանության բաժին, սահմանելու միտում՝ որպես օբյեկտների համաստորադաս խմբերը (տաքսոններ) նշող տաքսոնոմ. կատեգորիաների համակարգի մասին ուսմունք:

ՏԱՖՏ (Taft) Ուիլյամ Հոուվարդ (1857–1930), ԱՄՆ–ի 27–րդ նախագահ՝ 1909–13–ին՝ Հանրապետ. կուս–յունից: 1901–04–ին՝ Ֆիլիպինների նահանգապետ: 1904–08–ին՝ ռազմ. նախարար: Մասնակցել է 1906–ի Կուբայի ապստամբության ճնշմանը: 1921–ից՝ ԱՄՆ–ի Գերագույն դատարանի նախագահ:

ՏԵԲԱԼԴԻ (Tebaldi) Ռենատա (1922–2004), իտալացի երգչուհի (քնարադրամատիկ. սոպրանո): Հանդես է եկել Միլանի «Լա Սկալա» (1946–ից), Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերա», Չիկագոյի (1955–ից) և այլ օպեր. թատրոններում: Ջ. Վերդիի և Ջ. Պուչչինիի օպերաների դերերգերի լավագույն մեկնաբաններից: Տ–ին անվանել են «Աստվածային Ռենատա»:

ՏԵԳ (պիլ.՝ teg – սլաք, սայր), սառը զենք, նիզակի կարճ տարատեսակ:

ՏԵԳՆԵՐ (Tegnér) Էսայաս (1782–1846), շվեդ ռոմանտիկ բանաստեղծ: Եպս.: Հեղինակ է «Ասք Ֆրիտյոֆի մասին» (1825) պոեմի, որը դարձել է շվեդ. ռոմանտիզմի գլուխգործոցը, քառաբաց., հայրենասիր., փիլ. և սիրային թեմաներով բանաստեղծությունների:

ՏԵԳՈՒՍԻԳԱԼՊԱ (Tegucigalpa), Հոնդուրասի մայրաքաղաքը (1880–ից): Բն.՝ 1,1 մլն (արվարձաններով՝ 2,3 մլն, 2010): Ունի օդանավակայան: Երկրի գլխ. տնտ. կենտրոնն է: Հիմնադրվել է 1578–ին: Կան XVIII դ–ի ճարտ. հուշարձաններ:

ՏԵԼԱՆԹՐՈՊ (< հուն. telos – վերջ, ավարտուն, anthropos – մարդ), բրածո մարդ, որի մնացորդները հայտնաբերվել են Սվարտկրանսի (ՀԱՀ) քարանձավում: Սկզբնապես առանձնացվել է Telanthropus capensis–ը, ներկայում ներառվում է Homo ergaster տեսակում:

ՏԵԼԵ... (հուն.՝ tele – հեռավորություն, հեռու), բարդ բառերի մաս. ցույց է տալիս հեռ–յուն, հեռվում կատարվող գործողություն:

ՏԵԼԵԶԻՈ (Telesio) Բեռնարդինո (1509–1588), Վերածննդի դարաշրջանի իտալացի բնափիլ.: Նեապոլում հիմնադրել է բնության փորձ. ուսումնասիրությունների ակադ.: Մեծ ազդեցություն է ունեցել Թ. Կամպանելլայի, Ջ. Բրունոյի, Ռ. Դեկարտի և Ֆ. Բեկոնի գաղափարների ձևավորման վրա: Հեղինակ է «Իրերի բնույթի մասին՝ համաձայն իրենց սեփական օրենքների» աշխ–յան, որտեղ վերածնել է հինհուն. բնափիլ–յան ավանդույթները:

ՏԵԼԵԿԻ (Teleki) Պալ (1879–1941), Հունգարիայի վարչապետ՝ 1920–21 և 1939–41–ին: Տ–ի կառ–յունը միացել է *Հակակոմինտերնյան դաշինքին* (1936) և *Բեռլինի պակտին* (1940):

ՏԵԼԵԿԻՆԵԶ (< *տելե...* և հուն.՝ kinesis – շարժում), եզրույթ. նշանակում է ֆիզ. օբյեկտների տեղաշարժումն առանց մկան. ուժ գործադրելու: Այդ բացառիկ երևույթը բացատրելու փորձեր են նախաձեռնում հոգեբ–յան մեջ:

ՏԵԼԵՄԱՔՈՍ, *Ոդիսևսի* ու *Պենելոպեի* որդին հուն. դից–յան մեջ: Չկարողանալով զսպել իր մոր ձեռքը ինդրող փեսացուներին՝ ուղևորվել է Պիլոս և Սպարտա՝ հոր մասին տեղեկություններ իմանալու: Վերադառնալով տուն՝ նա ճանաչել է ցնցոտիների մեջ ծպտված հորը և նրա օգնությամբ կոտորել մոր փեսացուներին:

ՏԵԼԵՆՈՄՈՒՄՆԵՐ (Telnomus), մակաբույծ թաղանթաթևավորների ենթակարգի միջատների սեռ: Երկ.՝ 0,7–1,5 *մմ*: Հայտնի է 7 տեսակ: Մակաբուծում են այլ միջատների ձվերում: Բնության մեջ Տ. բազմաթիվ վնասակար միջատների թվաքանակի հիմն. կարգավորողներից են: Օգտագործում են կենսբ. պայքարի համար:

ՏԵԼԵՇՈՎ, Նիկոլայ Աֆանասևիչ (1828–1895), ռուս գյուտարար, հրետան. սպա: Ռուսաստանում ինքնաթիռների տեխ. նախագծերի հեղինակ (դրանցից մեկը պատենտավորվել է 1864–ին Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում, մյուսը 1867–ին՝ Ֆրանսիայում): Աշխարհում առաջիններից է առաջարկել *հրթիռային շարժիչը* կիրառել ինքնաթիռներում:

ՏԵԼԵՔՍ [< անգլ. tel (egraph) – հեռագիր և ex (change) – կոմուտատոր], բաժանորդ. հեռագրության միջազգ. ցանց: Հանդերձված է ինքնաշխատ հեռագր. կայաններով: Տ–ի առավել կարևոր տեղամասերում օգտագործում են հաճախային հեռագրության կապուղիներ:

ՏԵԼԼԵՐ (Teller) Էդվարդ (1908–2003), հունգար ֆիզիկոս: 1935–ից՝ ԱՄՆ–ում: Աշխ–ները վերաբերում են բետտա–տրոհման տեսությանը, նեյտրոնների ցրմանը, ջերմամիջուկ. ռեակցիաներին: Ամերիկ. ատոմ. ռումբի ստեղծման մասնակից և ջրածն. ռումբի ստեղծման աշխ–ների ղեկ.:

ՏԵԼՅԱՋԻՈՋՆԵՐ, մարդու և կենդանիների ինվազիոն հիվանդություններ, որոնց հարուցիչը կլոր որդերն են՝ տելյազիաները, որոնք մակաբուծում են արցունք. ապարատում: Ախտանիշները՝ թարախ. արտահոսք աչքերից, կուրացում:

ՏԵԼՈՒՐ (Tellurium), Te, տարրերի պարբեր. համակարգի VI խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 52, ա. զ.՝ 127,60: Անվանումը՝ լատ. tellus բառից, որը Telluris – Երկիր բառի սեռ. հոլովն է: Արծաթագորշավուն,

փխրուն, մետաղ. փայլով բյուրեղներ են, խտ.՝ 6,24 *գ/սմ*³, $t_{հալ.}$՝ 450°C: Կիսահաղորդիչ է: Օդում կայուն է, բարձր ջերմաստիճաններում այրվում է՝ առաջացնելով TeO_2: Բնության մեջ հանդիպում է տելուրիդների և բնածին S–ի ձևերով, հաճախ ուղեկցում է ծծմբին և սելենին, արդյունահանում են պղնձի էլեկտրոլիզի թափոններից: Համաձուլվածքների (պղնձի, կապարի, ձուլածո չուգունի) բաղադրիչ է, ապակու և խեցեղենի՝ ներկանյութ (շագանակագույն): S–ի մի շարք միացություններ կիսահաղորդիչներ են, ԵԿՁ–ման ընդունիչներ:

ՏԵԽԱՍ (Texas), նինգ ԱՄՆ հվ–ում: Տարածքը՝ 692 հզ. *կմ*², բն.՝ 27 մլն (2014): Վարչ. կենտրոնը՝ *Օստին*:

ՏԵԽԱՍԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ԱՄՆ–ի խոշոր բազույն համալսարաններից, հողամշակման տեխնոլոգիաների, օվկիանոսագիտության, աստղագիտ–յան, կենդանիների և բույսերի կլոնավորման առաջատար ԳՀ կենտրոն: Հիմնադրվել է 1876–ին Քոլեջ–Սթեյշեն ք–ում (Տեխասի նինգ): 2016–ին ուներ ավելի քան 50 հզ. ուսանող:

ՏԵԽՆԵՑԻՈՒՄ (Technetium), Tc, տարրերի պարբեր. համակարգի VII խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 43, ա. զ.՝ 98,9072: Ճառագայթաակտիվ է, առավել կայուն իզոտոպներ են ^{97}Tc, ^{98}Tc և ^{99}Tc ($T_{1/2}$ համապատասխանաբար՝ 2,6 · 10^6, 4,2 · 10^6 և 2,12 · 10^5 տարի): Արհեստականորեն ստացված առաջին տարրն է: Անվանումը՝ հուն. technetos – «արհեստական» բառից: Արծաթամոխրագույն մետաղ է, խտ.՝ 11,487 *գ/սմ*³, $t_{հալ.}$՝ 2200°C: Բնության մեջ աննշան քանակներով պարունակվում է ուրանի հանքաքարերում: Հայտնաբերվել է Արևի վրա և մի քանի աստղերում: Ստանում են ատոմ. թափոններից: Կատալիզորդների բաղադրիչ է: Փոխխակայուն ^{99m}Tc ($T_{1/2}$՝ 6,01 *ժ*) իզոտոպն օգտագործում են բժշկության մեջ ախտորոշման նպատակով:

ՏԵԽՆԻԿԱ (հուն.՝ techne – արվեստ, հմտություն), միջոցների ամբողջություն, որոնք ստեղծվել են արտադր–յան շարժընթացների իրականացման և հաս–յան ոչ արտադր. պահանջմունքների սպասարկման համար: S. կիրառվում է նյութ. և մշակութ. արժեքների ստեղծման, բնության և հաս–յան ուսումնասիրման, էներգիայի ստացման, հաղորդման և վերափոխման, տեղեկույթի հավաքման, պահպանման, մշակման և հաղորդման, արտադր. շարժընթացների կառավարման, նյութերի ստեղծման և վերամշակման, շարժման և կապի, կենցաղ. և մշակութ. սպասարկման, պաշտպանունակության ապահովման համար: «S.» եզրույթը հաճախ օգտագործում են նաև մարդու գործունեության որևէ բնագավառում օգտագործվող ունակությունների և ոճաձևերի ընդհ. բնութագրության համար:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՐԱՏՈՐՈՇՈՒՄ, մեքենաներում, սարքավորումներում ու նրանց հանգույցներում, տարրերում և այլուր արատների հայտնաբերում և ուսումնասիրում՝ նրանց աշխ. ռեժիմներում հնարավոր շեղումները կանխատեսելու համար, նաև շինվածքներում (տեխ. համակարգերում) արատների հայտնաբերման ու տեղաչափման մեթոդների ու միջոցների մշակում:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, մարդու կյանքի ու գործունեության համար արդ. արտադր–յան միջոցներով ստեղծվող ներդաշնակ առարկայական միջավայրի ձևավորման սոցիալ–մշակութ., տեխ. և գեղագիտ. խնդիրներն ուսումնասիրող գիտակարգ: Հիմն. բաժիններն են դիզայնի ընդհ. և գեղ. նախագծման տեսությունները:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԻԲԵՌՆԵՏԻԿԱ, կառավարման տեխ. համակարգերն ուսումնասիրող գիտ–յան բնագավառ: Կարևորագույն ուղղություններն են ինքնաշխատ ավտոմատացված կառավարման համակարգերի, նաև տեղեկույթի հաղորդման, մշակման ու պահպանման, ինքնաշխատ սարքավորումների ու համալիրների մշակումն ու ստեղծումը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ, տեխսպասարկում, միջոցառումների համալիր, որն իրականացվում է շահագործման ընթացքում սարքավորման հուսալիության ու աշխ. վիճակի պահպանության համար: Ներառում է սարքավորման աշխատունակությունն ապահովող անմիջական աշխ–ները (նախապահպանություն, ընթացիկ նորոգում, հսկողություն), նաև աշխ–ի տեխ. նախապատրաստման միջոցառումներ (կարգաբերում, լիցքավորում, հանդերձավորում, յուղում ևն), որոնց մեծ մասը կատարում են առանձին հանգույցները և միացքները՝ առանց հանելու ու քանդելու: S. ս. հնարավորություն է տալիս նվազեցնելու շահագործ. ծախսերը և նպաստում է տեխ. գոյապաշարի աճին:

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ (< հուն. techne – արվեստ, վարպետություն, հմտություն և ... *լոգիա*), արդ–յան տարբեր ճյուղերում, շին–յան և այլ բնագավառներում իրականացվող՝ հումքի, նյութերի, կիսաֆաբրիկատների կամ շինվածքների ստացման, մշակման կամ վերամշակման եղանակների համախումբ: S. են անվանում նաև այդպիսի եղանակներ մշակող և կատարելագործող գիտ. առարկան, արդյունահանման, մշակման, վերամշակման, փոխադրման, պահեստավորման գործողությունները, որոնք արտադր. շարժընթացի հիմն. բաղադրիչներն են: S. ներառում է նաև արտադր–յան տեխ. վերահսկողություն: S. է ընդունված անվանել նաև արտադր. շարժընթացների նկարագրությունը, դրանց կատարման վերաբերյալ հրահանգները, տեխնոլոգ. կանոնները, պահանջները, քարտեզները, գրաֆիկները ևն:

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՅՈՒՂԵՐ, քսանյութեր. ստացվում են նավթայուղերի, որոշ բնական յուղերի (արմավենու յուղ) տարբեր հավելանյութեր խառնելով: Կիրառում են մետաղը ճնշման տակ մշակելիս պլաստիկ ձևախախտումը հեշտացնելու համար: S. յ. են նաև մխման յուղերը:

ՏԵԽՆՈԿՐԱՏԻԱ, հաս. կյանքի տարբեր ոլորտների կազմակերպման և կառավարման ձև, որտեղ վճռորոշ դեր է հատկացվում ճարտարագիտատեխ. մտավորականությանը: S. բնութագրվում է ամբողջատիրությանը բնորոշ մեթոդներով, ժողովրդավար. ազատությունների սահմանափակմամբ, կարող է ի վերջո հանգեցնել հետադիմ. ուժերի դիկտատուրայի:

ՏԵՂԻՐԻ ՍԱՐԱՎԱՆԴ, Հայկ. լ–աշխարհում, Կարսի սարահարթի հվ–արլ. մասը՝ Տեկոր և Ախուրյան գետերի ու Երասխաձորի խոր կիրճերի միջև: Բարձր.՝ 1200–2000 *մ*: Եռանկյունաձև է, հս–արլ–ում հարում է Շիրակի դաշտին: Մակերևույթը բլրաթմբային է՝ կտրտված ոչ խորը, ժամանակավոր գործող հեղեղատներով ու հովիտներով: Լանդշաֆտը լ–տափաստանային է:

ՏԵԿՈՐԻ ՍՈՒՐԲ ԵՐԲՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՎԱՆՔ, **Տեկորի տաճար**, V դ–ի ճարտ. համալիր Անիից մոտ 20 *կմ* հվ–արմ.՝ Տեկոր գետի ափին (այժմ՝ Թուրքիայում): Կառուցել է իշխան Սմբատ Կամսարականը՝ որպես Սբ Սարգսի վկայարան: Եկեղեցին քառամույթ գմբեթավոր բազիլիկ էր՝ խորանարդաձև գմբեթով, որը հայկ. եկեղեց. ճարտ–յան մեջ հայտնի ամենահին քարե գմբեթն էր, ձևով՝ միակը (1911–ին փլվել է): Եկեղեցու հորինվածքը IX–XI դդ–ում կիրառվել է Բյուզանդիայում, լայնորեն տարածվել ուղղափառ (օրթոդոքս) երկրներում: 1920–ից հետո վանքն ամբողջովին ավերվել է:

ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ, արտացոլում են տեկտ. շարժումների պատմությունն ու երկրակեղևի կառուցվածքը: Տարբերում են տեկտ. շրջանացման (առանձնացնում են կառուցվածքատեսակ. միավորները) և կառուցվածք. (արտացոլում են կառուցվածք. ձևերը՝ շերտահավասարազծերի օգնությամբ) S. ք.:

ՏԵԿՏՈՆԻԿԱ, (հին հուն.՝ tektonike – կառույց, կառուցվածք), **գեոտեկտոնիկա**, երկրբ–յան (լայն առումով՝ մոլորակաբանության) բաժիններից, որն ուսումնասիրում է Երկրի (մոլորակների) արտաքին պինդ թաղանթի կառուցվածքը, ձևափոխություններն ու շարժումները, նրանց դրսևորման, բաշխման, առաջացման, առնչությունների ու զարգացման օրինաչափությունները՝ կապված Երկրի ընդհ. էվոլյուցիայի հետ:

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ, բովանդակությամբ, ձևավորմամբ և մաթ. հիմքով միասն. մանրակրկիտ աշխարհագր. քարտեզներ, որոնց վրա պատկերվում են տեղանքի բնական և սոցիալ–տնտ. օբյեկտները՝ դրանց յուրահատուկ քանակ. ու որակ. բնութագրումներով և տեղաբաշխման առանձնահատկություններով: Կազմվում են դաշտ. չափումների տեղագր. հանույթների միջոցով:

ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գիտաճյուղ. զբաղվում է տեղանքի աշխարհագր. և երկրչփ. ուսումնասիրությամբ. հանույթային աշխ–ների հիման վրա կազմում է տեղագր. քարտեզներ: Առաջին տեղագր. հանույթային աշխ–ները կատարվել են XVI դ–ում:

ՏԵՂԱԿԱԼՄԱՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ, տեղի են ունենում մոլ–ում մի ատոմի (ատոմ. խմբի) տեղակալմամբ մեկ այլ ատոմով (ատոմների խմբով): Նշանակում են S նշանով (< լատ. substitutio – տեղակալում): Տարբերում են նուկլեոֆիլ (ածխաջրածինների ալկիլհալոգենների հիդրոլիզը), էլեկտրոֆիլ (ալկիլում և ացիլում՝ ըստ Ֆրիդել–Քրաֆթսի) և ռադիկալ. (մետալեպսիա) տեղակալումներ:

ՏԵՂԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ, Երկրի տվյալ վայրի համար որոշված ժամանակը: Հավասար է երևակայական կետի՝ միջին հասարակած. Արեգակի անկյուն. ժամանակին: Կախված է վայրի աշխարհագր. երկայն–յունից և նույնն է տվյալ միջօրեականի բոլոր կետերի համար: *Գրինվիչի միջօրեականի* S. ժ. անվանում են համաշխ. ժամանակ:

ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ, մարդկանց խմբին հարկադրաբար այլ պետություն կամ տարածք արտաքսելը: 1915–16–ին երիտթուրք կառ–յան որոշմամբ իրականացվել է Արմ. Հայաստանի և Թուրքիայի հայ բնակչութ–

յան բռնի տեղահանություն, որը հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության բաղկացուցիչ մասն էր:

ՏԵՂԱՃԱՐԱԿ, *էնդեմիա*, որևէ տարածքում որոշակի (հաճախ՝ վարակիչ) հիվանդության մշտ. գոյությունը:

ՏԵՂԱՆՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, *տոպոնիմիկա*, *անվանաբանության* բաժին: Զբաղվում է աշխարհագր. տեղանունների ուսումնասիրությամբ, քննության առնում տեղանունների իմաստը, կառուցվածքը, ծագումը և տարածման արեալը: Տ. արժեքավոր նյութ է տալիս պատմությանը, լեզվաբանը, ազգագրությանը, աշխարհագրությանը, օգնում է վերականգնելու հնագույն ցեղերի տարաբնակեցման սահմանները նև:

ՏԵՂԵԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գիտ-յան բաժին. ուսումնասիրում է *տեղեկույթի* կառուցվածքն ու ընդհ. հատկությունները, նաև գործունեության տարբեր բնագավառներում նրա հավաքման, պահպանման, փնտրման, վերամշակման, տարածման և օգտագործման հարցեր:

ՏԵՂԵԿԱԳԻՐ, **տեղեկաթերթ**, **բյուլետեն** (ֆրանս.՝ bulletin, իտալ.՝ bulletino – պաշտոնագիր, թերթիկ, ուշ լատ.՝ bulla – կնքված փաստաթուղթ), հարցերի որոշակի շրջանակի նվիրված պարբ. կամ շարունակ. հրտ-յուն («Տեղեկագիր ՀԽՍՀ Գերագույն խորհրդի», «Տեղեկագիր ՀՀ ԳԱԱ. Մաթեմատիկա» նև): Առանձին պարբ-ների տրվում է «բյուլետեն» անվանումը («Բժշկական բյուլետեն»): «Բյուլետեն» են անվանվում նաև կարճառոտ հաղորդագրությունները, պաշտոն. ակտերի ու հանձնարարականների հավաքածուները, ընտրողին տրվող ցուցակը, հիվանդին տրվող ժամանակավոր անաշխատունակության թերթիկը նև:

«ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱԱՀ-Ի», եռամսյա գիտ. հանդես (2003, Երևան, հոդվածները՝ ռուս., անգլ.), ՀԱԱՀ-ի հրտ-յուն: Խմբ.՝ Դանիել Պետրոսյան:

«ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ», գիտ. երկամսյա հանդես (1996–ից, Երևան, հոդվածները՝ հայ., ռուս., անգլ.): Հայաստանի շինարարների միության «Միդիս-Շար» ընկ-յան հրտ-յուն: Խմբ-ներ՝ Անահիտ Սարգսյան, Անահիտ Պողոսյան, Յուրի Սաֆարյան (2011–ից):

«ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀՀ ԳԱԱ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ», գիտ. քառամսյա հանդես (1948–ից, Երևան, հոդվածները՝ հայ., ռուս., անգլ., 1948–57-ին՝ որպես «ՀԽՍՀ ԳԱ. Տեղեկագիր. Ֆիզիկամաթեմատիկական, բնագիտական և տեխնիկական գիտություններ» հանդեսի բաժին, 1957–64-ին՝ «ՀԽՍՀ ԳԱ. Երկրաբանական, աշխարհագրական գիտությունների սերիա»): Խմբ-ներ՝ Հովհաննես Մաղաքյան, Արշալույս Գաբրիելյան, Էդուարդ Խաչատրյան, Աշոտ Ասլանյան, Բորիս Կարապետյան, Ռուբեն Ջրբաշյան (2001–ից):

«ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀՀ ԳԱԱ ԵՎ ՀԱՊՀ. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ», գիտ. եռամսյա հանդես (1948–ից, Երևան, հոդվածները՝ հայ., ռուս., անգլ.): Խմբ-ներ՝ Սարտին Կասյան, Ռաֆիկ Սարտիրոսյան (1988–ից):

«ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀՀ ԳԱԱ. ՄԱԹԵՄԱՏԻԿԱ», գիտ. երկամսյա հանդես (1966–ից, Երևան՝ ռուս.): Խմբ-ներ՝ Մխիթար Ջրբաշյան, Ռուբեն Համբարձումյան, Արթուր Սահակյան (2010–ից):

«ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀՀ ԳԱԱ. ՄԵԽԱՆԻԿԱ», գիտ. եռամսյա հանդես (1966–ից, Երևան, հոդվածները՝ հայ., ռուս., անգլ.): Խմբ-ներ՝ Նագուշ Հարությունյան, Սերգեյ Համբարձումյան, Վարդգես Գնունի, Արա Ավետիսյան (2005–ից):

«ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀՀ ԳԱԱ. ՖԻԶԻԿԱ», գիտ. երկամսյա հանդես (1966–ից, Երևան, հոդվածները՝ հայ., ռուս., անգլ.): Խմբ-ներ՝ Գրիգոր Ղարիբյան, Վլադիմիր Հարությունյան (1993–ից):

«ՏԵՂԵԿԱԳԻՐ ՃՇՀԱՀ-Ի», գիտ. երկամսյա հանդես (2006, Երևան, հոդվածները՝ հայ., ռուս., անգլ.): ՃՇՀԱՀ-ի հրտ-յուն: Գլխ. խմբ.՝ Գագիկ Գալստյան:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, կազմակերպորեն կարգավորված ծրագրասարքավորում և օժանդակ միջոցների համախումբ, որոնք ապահովում են մեծ ծավալի տեղեկույթի երկարատև հուսալի պահպանության հնարավորությունը:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ, մեթոդների, եղանակների, ծրագրատեխ. և տեխնոլոգ. միջոցների ամբողջություն, որոնք ապահովում են տեղեկույթի հավաքումը, կուտակումը, մշակումը, պահպանումը, տարածումը, նաև նախագծման և սարքավորումների արտադր-յան շարժընթացների ավտոմատացումը: Ներառում է նաև չափորոշիչների կազմակերպչ. մեթոդ. ապահովումն ու մշակումը: Համախ օգտագործում են «տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիա» եզրույթը:

«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ», գիտ. երկամսյա հանդես (1998–ից, Երևան, հոդվածները՝ հայ., ռուս., անգլ.): Հիմնադիր-խմբ.՝ Խաչիկ Քերոբյան:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ, *ինֆորմացիա* (լատ.՝ informatio – պարզաբանում, շարադրում), նախապես՝ տեղեկություններ, որոնք մարդիկ փոխանցում էին բանավոր, գրավոր և այլ եղանակներով (պայման. ազդանշաններով, տեխ. միջոցներով նև): XX դ-ի կեսին համագիտ. հասկացություն, որը ներառում է մարդկանց, մարդու և ավտոմատի, ավտոմատի և ավտոմատի միջև տեղեկությունների փոխանակումը՝ **տեղեկատվությունը**, կենդ. և բուս. աշխարհներում՝ ազդանշանների փոխանակումը, բջջից բջիջ, օրգանիզմից օրգանիզմ հատկանիշների գենետիկ. փոխանցումը: *Տեղեկագիտության* և *կիբեռնետիկայի* հիմն. հասկացություններից:

ՏԵՂԵՐԻ ՎԱՆՔ, XIII դ-ի ճարտ. հուշարձան ՀՀ Արագածոտնի մարզում՝ Բյուրականից հս՝ Տեղեր գ-ում: Վանքի Սբ Աստվածածին եկեղեցին և նրան արմ-ից կից գավիթը կառուցել է իշխան Վաչե Վաչուտյանի կինը՝ Մամախաթունը (ճարտ.՝ *Աղբայրիկ վարդապետ*): Եկեղեցին (1213–32) ներքուստ՝ խաչաձև, արտաքուստ ուղղանկյուն, գմբեթավոր հորինվածք է, գավիթը (1221–32)՝ քառասյուն, կենտրոնակազմ տիպի՝ 12-նիստանի ցածրադիր վրանաձև գմբեթով:

ՏԵՂԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ, ճարտ. հուշարձան ՀՀ Սյունիքի մարզի Տեղ գ-ում: Թաղածածկ դահլիճ է՝ 2 մասից: Հնագույնը (IV–V դդ.) ունի պայտաձև խորան և բեմի կամար՝ զարդագոտիով և կամարակալներով: 1737-ին արմ-ից հավելել են երկհարկանի, կոպտատաշ բազալտով կցակառույց: Տեղ գ-ից մոտ 3 *կմ* հվ-արլ. «Մռնեղցի» վաղմիջնադար. թաղածածկ դահլիճ եկեղեցին է՝ պայտաձև հատակագծով և կամարաձև խորանով: Տեղ գ-ում կանգուն է նաև Մելիք-Բարխուդարյանի «ամարաթը» (1783), «քարե օթախը»՝ թաղածածկ սենյակներով բնակելի համալիրը:

ՏԵՂՈՐՈՇԻՉ, օբյեկտից անդրադարձած ձայնի կամ էլեկտրամագնիս. ալիքների կամ նրա սեփ. ճառագայթման միջոցով այդ օբյեկտի տեղադրության որոշման սարք: Տարբերում են հիդրոտեղորոշիչներ, ռադիոտեղորոշիչներ և, լազերի՝ որպես ճառագայթման աղբյուր օգտագործմամբ օպտիկ. Տ-ներ:

ՏԵՄԻՆ, Թեմին (Temin), Հաուարդ Մարտին (1934–1994), ամերիկացի վիրուսաբան: Հետազոտել է բնականոն բջիջների հետ ուռուցքածին վիրուսների փոխազդեցությունը: Հայտնագործել է (Ռ. *Բալթիմորից* անկախ) հետադարձ տրանսկրիպտազ ֆերմենտը, որն ապահովում է գենետիկ. տեղեկույթի փոխանցումը ՌՆԹ-ից ԴՆԹ-ին: Ձևակերպել է նախավիրուսի տեսությունը: Նորելյան մրց. (1975, Դ. Բալթիմորի և Ռ. *Դուլբեկոյի* հետ):

ՏԵՄԻՐԿԱՆՈՎ, Յուրի Խատուևիչ (ծ. 1938), ռուս. դիրիժոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1981): 1968-ից՝ Լենինգրադի ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխ. դիրիժոր և գեղ. ղեկ., 1976–86-ին՝ ՕԲԹ-ի ակադեմ. սիմֆ. նվագախմբի, 1978-ից (միաժամանակ)՝ Լոնդոնի թագավոր. և Ֆիլադելֆիայի նվագախմբերի դիրիժոր: ԽՍՀՄ (1976, 1985), ՌԴ (1998) Պետ. մրց-ներ:

ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆ Եղիա Կարապետի (1851–1908), գրող, փիլ., բառարանագիր, մանկավարժ: 1882-ից՝ Կ. Պոլիս վարժարանների տեսուչ: 1883–88-ին՝ «Գրական եւ իմաստասիրական շարժում», 1884–88-ին՝ «Երկրագունտ», միաժամանակ, 1886–88-ին՝ «Տնտես» պարբ-ների, 1889-ին՝ «Դար» ժող-ի խմբ-հրտ.: Ըստ Տ-ի փիլ-յան՝ բնության, հաս-յան և ճանաչողության խնդիրները պետք է քննվեն գիտ-յան նվաճումների լույսի տակ: Հեղինակ է «Դամբարան» (1878), «Փիլիսոփայական բառարան ժողովրդական» (1879), «Տարերք պատմութեան իմաստասիրութեան» (1891) գրքույկների, «Նոր կեանք» (1879), «Աղջկանց դաստիարակութեան վրայ ճառ» (1890), «Ազգագրութիւն Տէմիրճիպաշեանց» (1900) և փիլ., գեղագիտ. մանկավարժ. այլ աշխ-ների, «Բառարան ֆրանսերէն-հայերէն»-ի (1896), «Արձակ էջեր, նամակներ, քերթուածներ» (հրտ.՝ 1955), «Հրայրք մութին» (հրտ.՝ 2008) գեղ. գործերի ժող-ների: Ինքնասպան է եղել:

ՏԵՄՊԵՐԱ (իտալ.՝ tempera, temperare – ներկերը խառնել), գեղանկարչություն ներկերով, որոնց կապակցանյութը ջրի ու ձվի դեղնուցից ստացված, նաև յուղի (կամ յուղի ու լաքի) հետ խառնված, ջրի մեջ լուծված բուս. կամ կենդ. սոսնձից պատրաստված էմուլսիաներն են:

ՏԵՅՏԵՄ, Տետամ (Tatum), Էդուարդ (1905–1975), ամերիկացի գենետիկ: Բացահայտել է բակտերիաների գենետիկ. ռեկոմբինացիան (1947, Ջ. Լեդերբերգի հետ): Մոլ. գենետիկայի հիմնարար հայեցակարգի (1 գեն՝ 1 ֆերմենտ) հեղինակներից է:

Նորելյան մրց. (1958, Ջ. Ու. *Բիդլի* հետ):

ՏԵՆ, Թեն (Taine), Իպոլիտ Ադոլֆ (1828–1893), ֆրանսիացի փիլ., գրող, գեղագետ: Նատուրալիզմի գեղ. տեսության և մշակութ–պատմ. դպրոցի հիմնադիրը: Հեղի-

նակ է «Քննադատական փորձեր» (1858), «Անգլիական գրականության պատմություն» (հ. 1–4, 1863–64), էտյուդներ Օ. դը Բալզակի (1858), Ստենդալի (1864) մասին և այլ աշխ–ների: «Գեղարվեստի փիլիսոփայություն» (1865–69, հայ. հրտ.՝ 1936) երկում առաջինն է փորձել սոցիոլոգիան կիրառել արվ–ի ուսումնասիրության մեջ:

ՏԵՆԳԱ (թյուրք.), արծաթե դրամ Միջին Ասիայում (Խիվա, Բուխարա, Տաշքենդ, Կոկանդ): 1 S. = մոտ 20 կոպեկի: Հատվել է XIV դ–ից մինչև 1893–ը:

ՏԵՆԳ, օրգանիզմի ընդհ. հակազդեցությունը հիվանդածին ներգործությունների (վարակ, վնասվածք ևն) հանդեպ: Բնորոշվում է մարմնի ջերմաստիճանի բարձրացմամբ, նյութափոխանակության, արյան շրջանառության խանգարումներով:

ՏԵՆԳԵՐ (անգլ.՝ tender, < tend – սպասարկել), 1. շոգեքարշի կցամաս, որտեղ պահում են ջրի, վառելանյութի, քսայուղերի պաշարներ, գործիքներ: 2. Թեք առագաստներով միատեղ ծով. առագաստանավ: Մարզանավի տեսակ: Ունի 2–3 առջևի եռանկյունաձև առագաստներ: Ռազմ. առագաստ. նավատորմում ամենափոքր առագաստանավը:

ՏԵՆԵՐԻՖԵ (Tenerife), հրաբխ. կղզի Կանարյան կղզեխմբում (Իսպանիա): Տարածքը՝ 1946 *կմ*^{2}, բն.՝ 890 հզ. (2014): Բարձր.՝ մինչև 3718 *մ*: Գլխ. ք–ը՝ ***Սանտա Կրուս դե Տեներիֆե***:

ՏԵՆԶՈՄԵՏՐ (< լատ. tensus – լարում և ...*մետր*), **լարումաչափ**, պինդ մարմինների (օր.՝ մեքենամասերի, կառուցվածքների, շինությունների) դեֆորմացիաների չափման սարք: Առավել տարածված են տենզոռեզիստորների հիմքով S–երը:

ՏԵՆԶՈՐԱՅԻՆ ՀԱՇԻՎ, մաթ–ի բաժին. ընդհանրացնում է վեկտոր. և մատրիցական հանրահաշիվները: S. h–ում ուսումնասիրում են հատուկ տեսակի մեծություններ՝ տենզորներ, որոնք յուրաքանչյուր կոորդինատ. համակարգում նկարագրվում են մի քանի թվերով: Ընդ որում, մի կոորդինատ. համակարգից մյուսին անցնելիս այդ թվերի ձևափոխման օրենքը շատ ավելի բարդ է, քան վեկտորներինը:

ՏԵՆԻԴՈԶՆԵՐ, մարդու և գիշակերների ինվազիոն հիվանդություն (ցեստոդոզների խմբի հելմինթոզ): Հարուցիչները երիզորդների ընտանիքի ժապավենաձև որդերն են, որոնք մակաբուծում են բարակ աղիներում: Ախտանշանները՝ փսխում, լուծ, հյուծում: Երիզորդների թրթուրներն առաջացնում են ***ցիստիցերկոզ***, էխինոկոկոզ:

ՏԵՆԻՆ Բորիս Միխայլովիչ (1905–1990), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1981): Լ. Պ. ***Սուխարևևկայայի*** ամուսինը: 1937–74–ին (ընդհատումով)՝ Լենինգրադի Կոմեդիայի, Մոսկվայի դրամատիկ., 1974–ից՝ Վ. Մայակովսկու անվ. թատրոնների դերասան: Խաղացել է «Լև Գուրիչ Սինիչկին» (ըստ Դ. S. Լենսկու), Ա. Ն. Արբուզովի «Հասոճ կատակերգություն», Ֆ. Դյուրենմաթի «Տիկնոջ այցը» և այլ ներկայացումներում, նկարահանվել «Հրացանավոր մարդը», «Ռուսական հարց» և այլ ֆիլմերում: ԽՍՀՄ Պետ. մրց. (1948):

ՏԵՆՆԱՆՏ (Tennant) Սմիթսոն (1761–1815), անգլիացի քիմիկոս: Հաստատել է (1797), որ ալմաստը, գրաֆիտը, փայտածուխն ունեն միևնույն քիմ. բաղադրությունը: Հայտնաբերել է (1804) ***օսմիումը*** և ***իրիդիումը***:

ՏԵՆՈՉԻՏԼԱՆ (Tenochtitlán), խոշոր ք. Մեխիկոյի հովտում XIV դ.–XVI դ–ի սկզբին, ացտեկների պետության մայրաքաղաքը: Հիմնադրվել է 1325–ին: Հիմնովին ավերել են (1521) իսպանացի նվաճողները: S–ի ավերակների վրա կառուցվել է ***Մեխիկոն***:

ՏԵՆՈՐ (իտալ.՝ tenore, < լատ. tenero – պահել), 1. տղամարդու բարձր երգչաձայն: Տարբերում են քնար., դրամատիկ., քնարադրամատիկ. S–ները: 2. Պղնձե փող. երաժշտ. գործիք: 3. Նույն ընտանիքի միջին ռեգիստրի որոշ երաժշտ. գործիքների ընդհ. անվանումը (սաքսոֆոն–S. ևն):

ՏԵՆՅԻՆԳ Նորգեյ (1914–1986), լեռնագնաց: Ազգությամբ՝ շերպ, Հնդկաստանի քաղաքացի: Սկսնակցել է Ջոմոլունգմայի 6 վերելքի (հաղթահարել է 1953–ին՝ Է. ***Հիլարիի*** հետ):

ՏԵՌԱՐԻՈՒՄ (լատ.՝ terra – ցամաք, հող), ցամաք. ոչ մեծ կենդանիների, հիմնականում՝ սողունների և երկկենցաղների պահպանության տեղ:

ՏԵՍԱԱԶԴԱՆՇԱՆ, էլ. ազդանշան. օգտագործվում է պատկերի ձևավորման (սինթեզի), հաղորդման և վերարտադրման համար՝ հեռուստատեսությունում, համակարգչ. տեխնիկայում, լուսանկարչության, ռադիոտեղորոշման մեջ և այլուր: Ձևավորվում է օպտոէլ. ճեպափոխիչներով (հաղորդող էլեկտրոնաճառագայթ. սարքեր և դրանց պինդմարմնային նմանակներ, լուսաէլեկտրոն. սարքեր) կամ ռադիոտեղորոշիչով ընդունված էլեկտրամագնիս. ալիքների դետեկտման հետևանքով: S–ի սպեկտրի լայնությունը մի քանի *ՀՀ*–ից (պատկերի միջին պայծառության փոփոխություն) մինչև 40 *ՄՀց* է (բարձր հստակության հեռուստատեսություն):

ՏԵՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սովորաբար մագնիս. ժապավենի (մագնիս. S.) կամ օպտիկ. սկավառակի (օպտիկ. S.) վրա պատկերի գրանցում՝ տեսամագնիտոֆոնի կամ DVD–նվագարկիչի միջոցով հեռուստացույցի էկրանի վրա վերարտադրելու նպատակով: Օպտիկ. սկավառակներով S–յան դիտման համար օգտագործում են նաև համակարգիչը:

ՏԵՍԱԽՑԻԿ, շարժ. հեռուստատեսահաղորդիչ խցիկ, որը կառուցվածքայնորեն միավորված է ***տեսամագնիտոֆոնի*** (կամ նրա՝ օպտիկ. սկավառակի վրա ձայնագրումով) նմանակի հետ, իսկ ներկառուցված միկրոֆոնն ապահովում է ուղեկցող ձայնի գրանցումը: Ունի էլեկտրոն. դիտան, որը կարող է օգտագործվել նաև գրանցված թեմաները (ծրագրերը) շտապ դիտելու համար: 1990–ական թթ–ից լայնորեն օգտագործվում են տեսաազդանշանի թվային մշակմամբ, բարձր շահագործ. հատկություններով S–ները, որոնք հնարավորություն են տալիս շտկելու տեսապատկերները:

ՏԵՍԱՅՐՈՒՄ (անգլ.՝ scan – տեսադաշտ), 1. (ռադիոտեխ.) լուս. ճառագայթի, էլեկտրոնների փնջի պլեհավաքի (պլեցիր), ճառագայթման շարժ. դետեկտորների (տեսածրի) և այլ սարքերի առավելագույն ճառագայթման ուղղության կառավարելի տարած. տեղափոխություն (որոշակի օրենքով), երբ հաջորդաբար «դիտարկվում է» հետազոտվող տարածության կամ մակերևույթի տրված գոտին: S–ման սկզբունքի վրա է հիմնված էլեկտրոնաճառագայթ., օպտոէլեկտրոն., սարքերի, ռադիոտեղաբաշխման կայանների, համակարգչ. շերտագրության և այլ սարքերի աշխ–ը: 2. (Բժշկ.) ռադիոիզոտոպ. հետազոտման եղանակ՝ տեսածրիչների կամ ճառագայթման շարժ. դետեկտորների կիրառմամբ, որոնք տալիս են օրգանիզմում տեղաբաշխված ռադիոակտիվ իզոտոպների պատկերը (գծիկների տեսքով) ամբողջ մարմնի կամ նրա մասերի շերտառ շերտ հետազոտման միջոցով:

ՏԵՄԱԿ (կենսբ.), հիմն. կառուցվածք. և դասակարգման (տաքսոնոմ.) միավորը կենդանի օրգանիզմների համակարգում. առանձնյակների պոպուլացիաների ամբողջությունը, որոնք կարող են խաչասերմամբ առաջացնել որոշակի արեալ բնակեցնող, ձևաբանաֆիզիոլոգ. և ֆիզիոլոգ. մի շարք ընդհ. հատկանիշներով օժտված պտղատու սերունդներ: Կենդանիների և բույսերի կարգաբանության մեջ S. նշանակվում է երկանվանակարգության համապատասխան:

ՏԵՄԱԿԱՌԱՋԱՑՈՒՄ, կենսբ. նոր տեսակների առաջացումը և նրանց փոփոխությունը ժամանակի ընթացքում: S–ման հիմքն օրգանիզմների ժառանգ. փոփոխականությունն է, առաջատար գործոնը՝ բնական ընտրությունը: Տարբերում են **ալոպատրիկ** և **սիմպատրիկ** S–ներ:

ՏԵՄԱԿԱՐԱՐ ԾԱՎԱԼ, նյութի զանգվածի միավորի ծավալը, ***խտությանը*** հակադիր մեծություն:

ՏԵՄԱԿԱՐԱՐ ԿՇԻՌ, նյութի ծավալի միավորի կշիռը: Ի տարբերություն ***խտության***՝ S. կ. նյութի ֆիզքիմ. բնութագիրը չէ, քանի որ այն կախված է չափման վայրից:

ՏԵՄԱՀՍԿԻՉ ՍԱՐՔ, տեսաազդանշանի հարաչափերի հսկման և չափման սարք՝ նրա կազմավորման և հաղորդման ուղու բոլոր կետերում: Ապահովում է հեռուստատես. պատկերման որակի ակնադիտ. հսկողությունը: Պարունակում է հատուկ չափիչ սարքավորում և մոնիտոր: S. ս–ում վերահսկվում են հեռուստատես. ռաստրի գծայնությունը և երկրչփ. չափերը, պատկերման տարբեր տեղամասերի պայծառությունների համամասնությունը, սպիտակ լույսի հավասարակշռությունը, գունավորությունը ևն:

ՏԵՄԱՄԱԳՆԻՏՈՖՈՆ, սարքավորում, որի միջոցով մագնիս. ժապավենի վրա գրառում են պատկերի ազդանշանները (ձայնի ուղեկցությամբ) և վերարտադրում դրանք:

ՏԵՄԱՆԵԼԻ ԱՍՏՂԱՅԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ (mv), Աստղային մեծություն, որը որոշվում է ուղիղ դիտումով և համապատասխանում է մարդու աչքի սպեկտրային զգայնությանը (վերջինի առլգն արժեքը համապատասխանում է 0,55 *մկմ* երկ–յան ալիքին):

ՏԵՄԱՆԵԼԻ ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄ, մարդու աչքով անմիջականորեն տեսանելի էլեկտրամագնիս. ճառագայթում: S. ճ–ման ալիքի երկ–յունը մոտ 400 *նմ*–ից (մանուշագույն) մինչև մոտ 760 *նմ* (կարմիր) է, որը համապատասխանում է մոտ $(7{,}5 – 4) \cdot 10^{14}$ *Հց*–ին: S. ճ–ման տիրույթը բնորոշվում է աչքի սպեկտրալային զգայունության կորով:

«ՏԵՄԱՆԿՅՈՒՆ», հաս–քաղ., տեղեկատվ., մշակութ. ամսաթերթ (2006–ից, Նոյեմբերյան): Հիմնադիր–խմբ.՝ Ոսկան Սարգսյան:

ՏԵՄԱՔԱՐՏ, **տեսաձայնարկիչ**, էլեկտրոն. մագնիսատախտակ. նախատեսված է տեսատվյալների մշակման և ցուցասարքի (համակարգչի, բջջ. հեռախոսի ևնի) աշխ–ի կառավարման համար: Որոշում է ձևավորվող պատկերի արագությունը և

որակը, ցուցասարքի լուծունակությունը, հնարավոր ձայների թիվը:

ՏԵՍԼԱ, (Tesla) Նիկոլա (1856–1943), էլեկտրոն. ռադիոտեխնիկայի բնագավառի սերը գյուտարար: 1884–ից՝ ԱՄՆ–ում: 1888–ին նկարագրել է (անկախ իտալացի ֆիզիկոս Գ. Ֆեռարիսից) պտտվող մագնիս. դաշտի երևույթը: Ստացել է արտոնագրեր՝ բազմաֆազ էլ. մեքենաների, բազմաֆազ փոփոխ. հոսանքի բաշխման գյուտերի համար: ԲՀ տեխնիկայի (գեներատորներ, տրանսֆորմատոր ևն, 1889–91) առաջամարտիկներից է: Հետազոտել է առանց հաղորդալարերի էլ. ազդանշանների և էլեկտրաէներգիայի հաղորդման հնարավորությունը: Տ–ի անունով է կոչվել մագնիս. ինդուկցիայի միավորը ՄՄՀ–ում. նշանակվում է *Տլ*: $1\ Տլ = Վբ/մ^2 = 1\ Ն/(Ա \cdot մ) = 10^4\ Գա$:

ՏԵՍԼԱՉԱՓ, ոչ ֆեռոմագնիս. միջավայրում մագնիս. դաշտի ինդուկցիան կամ լարվածությունը չափելու սարք: Գոյություն ունեն ինդուկցիոն Տ–ներ, Հոլլի էֆեկտի, ՄՄՌ–ի վրա հիմնված ֆերոզոնդային Տ–ներ:

ՏԵՍՈՂԱԿԱՆ ՆՅԱՐԴ (nervus opticus), գլխուղեղ. 2–րդ զույգ նյարդը, որով աչքի ցանցաթաղանթի զգացող բջիջների ընկալած տեսող. գրգիռները հաղորդվում են գլխուղեղ: Սկսվում է ցանցաթաղանթի հանգուց. բջիջներից: Աչքի զարկերակի հետ մտնում է գանգի խոռոչ, ուղեղի հիմի մոտ առաջացնում տեսող. խաչվածք, որից հետո Տ.ն. կոչվում է տեսող. տրակտ, որը վերջանում է արտաքին ծնկաձև մարմնում: Վերջինից սկսվում է կենտր. տեսող. ուղին, որն ավարտվում է գլխուղեղի ծոծրակ. բլթի կեղև. մասում: Տ.ն–ի խաչվածքի, ուղու վնասումը կարող է հանգեցնել տեսող. դաշտի համապատասխան կեսի անկման (հեմիանոպսիա):

ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆ, դիտվող առարկաներից եկող լուս. ճառագայթների ընկալման օգնությամբ առարկաների մեծությունը, ձևն ու գույնը, դրանց փոխադարձ դիրքն ու միմյանց միջև հեռ–յունն ընկալելու՝ աչքի հատկությունը: Տեղեկույթի 80–85 %–ը մարդն ստանում է Տ–յան միջոցով: Ալիքների 390–760 *նմ* երկ–յան ընդգրկույթում մարդը և բարձրակարգ կենդանիները լույսն ընկալում են աչքի ցանցաթաղանթի բջիջներով:

ՏԵՍՏԵՐ, 1. սարք, համակարգ կամ ծրագիր, որով հսկվում են ուսումնասիրվող օբյեկտը, նրա գործողության ճշտությունը, հիմն. հարաչափերի չափումը, օբյեկտների որոշակի դասի պատկանելությունը (տեսակը) ևն: 2. Համակցված էլեկտրաչափիչ սարք (օր.՝ ամպերվոլտմետր). օգտագործվում է ռադիոէլեկտրոն. սարքավորումների աշխատունակության ստուգման և կարգաբերման համար:

ՏԵՍՏՈՍՏԵՐՈՆ, ողնաշարավոր կենդանիների և մարդու արական սեռ. (այրածին) հիմն. հորմոնը: Արտադրվում է հիմնականում սերմնագեղձերում: Խթանում է արական սեռ. օրգանների ֆունկցիան, 2–րդային սեռ. հատկանիշների զարգացումը: Քիմ. բնույթով ստերոիդ է:

ՏԵՎԴՈՐԵ, **Թևդորե**, XI դ–ի վերջ–XII դ–ի սկզբի վրացի նկարիչ: Որմնանկարել է Վերին Սվանեթիայի մի շարք եկեղեցիներ (Իփրարի, 1096, Կվիրիկե և Իվլիտե, 1112, Նակիփարի, 1130):

ՏԵՎՏՈՆԱԿԱՆ ՈՒԽՏ (լատ. լրիվ անվանումը՝ Ordo domus Sanctae Mariae Teutonicorum), գերմ. կաթոլիկ. հոգևոր–ասպետ. ուխտ. ստեղծվել է XII դ–ի վերջին Պաղեստինում՝ խաչակրաց արշավանքների ժամանակ: 1198–ին հաստատել է Ինոկենտիոս III պապը: XIII դ.–1525–ին Մերձբալթիկայում, լեհերից, պրուսացիներից, լիտվացիներից զավթած տարածքներում ձևավորվել է Տ. ու. պետությունը: *Գրյունվալդի ճակատամարտում* (1410) Տ. ու. կործանիչ պարտություն է կրել լեհ., լիտվ. և ռուս. զորքերից, ուխտի նվաճող. քաղ–յունը կասեցվել է: 1466–ի Տորունի պայմանագրով Տ. ու. իրեն ճանաչել է Լեհաստանի վասալ: 1525–ին մեծ մագիստրոս Ալբրեխտ Հոհենցոլեռնը (Բրանդենբուրգցի) Մերձբալթիկայում բռնագրավել է եկեղեց. հողերը, և դրանք դարձրել աշխարհիկ դքսություն՝ *Պրուսիա*:

ՏԵՎՏՈՆՆԵՐ (լատ.՝ Teutoni, Teutones), գերմ. ցեղեր: Մ. թ. ա. II դ–ի վերջին Յուտլանդիա թ–կղզուց շարժվել են հվ և ներխուժել Գալիա: Այնուհետև, կիմբրիներին և գերմ. այլ ցեղերի միացած, մտել են Հս. Իտալիա: Մ. թ. ա. 102–ին նրանց գլխովին ջախջախել են հռոմ. զորքերը: Տ. երբեմն գործածվել է որպես գերմանացիների ընդհ. անվանում: Տ–ից է առաջացել «*Տևտոնական ուխտ*» արտահայտությունը:

ՏԵՎՐԻԿ, գետ Հայկ. լ–աշխարհում, Եփրատի աջ վտակը: Սկիզբ է առնում Հս– հայկ. Տավրոսի համակարգի Թեջեր լ–շղթայի հվ. լանջերից (2 օժանդակներով): Երկ.՝ մոտ 123 *կմ*: Հոսում է լայն հովտով և Տևրիկ (Դիվրիգ) ք–ից արլ. թափվում Եփրատը: Մնումը ձնաանձրևային է, վարբրումը՝ գարնանը: Տ–ի հովտով է անցնում Սվազ–Երզնկա երկթղ–ն:

ՏԵՏԵՅԱՆ (Դեղեյան) Շառլ (Կարապետ) Տիգրանի (1910–2003), գրականագետ: Քրիստիան *Տետեյանի* երկվորյակ եղբայրը: Գրել է ֆրանս.: 1949–ից՝ Սորբոնի համալսարանի համեմատ. գրկ–յան ամբիոնի վարիչ, պատվ. պրոֆ. (1979), Ֆրանսիայի ակադ–ի լեզվ. և գրկ–յան հարցերի միջազգ. ընկ–յան պատ. քարտուղար: Ֆրանս. «Կլարտե» հանրագիտարանի գլխ. խմբ.: Ուսումնասիրություններն ընդգրկում են անտիկ գրկ–ից մինչև ժամանակակից գրկ–ը: «Պատերազմ մարդկանց ցավի մեջ» (1971) աշխ–յան մեջ անդրադարձել է Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպին և Հայոց ցեղասպանությանը:


Ֆրանսիայի ակադ–ի Մեծ, «Ֆրանսիական միտք» և «Ֆրանսիական ճառագայթ» մրց–ների:

ՏԵՏԵՅԱՆ (Դեղեյան) Քրիստիան (Խաչիկ) Տիգրանի (1910–2000), գրող: ՎնտՄՄ պատվ. անդամ: Շառլ *Տետեյանի* երկվորյակ եղբայրը: Գրել է ֆրանս. և հայ.: Հեղինակ է «Սգավորված դիմակահանդես» (1931), «Կորած երաժշտությունը» (1942), «Բարձր ծով» (1943), «Ջութակն ու խաչը» (1952, Ֆրենսիս Ջեյմ մրց.) վեպերի, «Աղոթք՝ մահվան հրեշտակին» (1947), «Իսպանական օպերա» (1965), «Ներքին աշուն» (1973) պոեմների, «Ալեն Ֆուռնիե և գաղտնի իրականությունը» (2 հրտ.՝ 1967, Ֆրանսիայի ակադ–ի մրց.), «Ներվալը՝ գիշերային ուխտավորը» (1966) էսսեների, «Տետեյաններ» (h. 1, 2, 1972, 1982) աշխ–յան՝ նվիրված գմյուռնահայ տպարանատեր–հրտ–ներ Տետեյան գերդաստանին:

ՏԵՏԵՅԱՆ եղբայրներ, **Տետեյաններ**, գմյուռնահայ տպարանատեր–հրտ–ներ, խմբ–ներ, թարգմանիչներ: Գերդաստանի հայրը՝ **Հովհաննես Կարապետի Տ.** (1795–1878), զբաղվել է Եվրոպա գղտ. ապրանքների արտահանությամբ: **Տիգրան Հարություն Տ.** (1832–1868) 1852–ին հիմնադրել է տպարան («Տպ. Տետեյան եղբարց», գործել է շուրջ 40 տարի, տպագրել են 200 անուն գիրք, «*Արփի Արարատեան*» և «*Ծաղիկ*» հանդեսները), գրել բանաստեղծություններ, կատարել թարգմ–յուններ, կազմել ուս. ձեռնարկներ ևն: **Արամ Կարապետ Տ.** (1822–1901) 1853–ից զբաղվել է գր–հրտչ. աշխ–ով, կատարել է նաև թարգմ–յուններ: 1859–ին երկու Տ–ների և ուր. նախաձեռնությամբ հիմնադրվել է «Հաշտենից ընկերությունը», որը 1860–ին լույս է ընծայել «*Միութին*» պաշտոն. հանդեսը: **Հայկ Հակոբ Տ.** (ծ. թ. անհտ–1909), **Ստեփան Տ.** (1823–1906), **Սարգիս Տ.** (ծ. և մ. թթ. անհտ) նույնպես զբաղվել են հրտչ. և թարգմ. գործունեությամբ:

ՏԵՏՐԱ... (հուն.՝ tetra – չորս), բարդ բառերի մաս. նշանակում է չորս, չորրորդ, քառորդ (օր.՝ տետրաէդր՝ քառանիստ):

ՏԵՏՐԱԼԻՆ, **քառահիդրոնավթալին**, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 207,6°C: Պարունակվում է քարածխ. խեժում և նավթավերամշակման արգասիքներում: Կիրառվում է որպես լուծիչ, ճարպազերծող միջոցների բաղադրիչ, շարժիչ. վառելանյութերի հավելանյութ և օրգ. ներկանյութերի սինթեզի համար:



ՏԵՏՐԱԽՈՐԴ (< *տետրա*... և հուն. chorde – լար), **քառալար**, երաժշտության տեսության մեջ 4 հաջորդ. աստիճաններով կազմված հնչյունաշարը:

«ՏԵՏՐԱԿ ՈՐ ԿՈՉԻ ՆՇԱԻԱԿ», «Տետրակ, որ կոչի Նշաւ վասն կառավարելոյ ինչս որբոց և առանց կտակ ննջեցելոց», Հաղկաստանի Սադրաս ք–ի հայ գաղութի ինքնավարության կանոնադրությունը, *Սադրասի խմբակի* երկերից: Հրատարակվել է Սադրասում 1783–ին (հեղինակ՝ Շահամիր *Շահամիրյան*): Գրվել է «*Որոգայթ փառացի*» գաղափարների ոգով: Նախատեսում էր հիմնադրել բարեգործ. դրամարկղ՝ «Մնդուկ որբոց Սադրասի հայոց», որտեղ հավաքված միջոցներից օգնություն էր տրվելու որբերին, աղքատներին, ազգ. դպրոցին:

ՏԵՏՐԱՊՈԴՆԵՐ (Tetrapoda), ցամաք. ողնաշարավորների (երբեմն՝ վերնադասում առանձնացված) խումբ: Միավորում է երկկենցաղներին, սողուններին, թռչուններին և կաթնասուններին: Տ–ին բնորոշ են հնգամատ զույգ վերջույթները, թոք. շնչառությունը, տարանջատված գլուխն ու պարանոցը: Առանձին հատկանիշներ կարող են երկրորդաբար կորչել, օր.՝ օձերի, որոշ մողեսների և որդերի զույգ վերջույթները:

ՏԵՏՐԱՅԻԿԼԻՆՆԵՐ, քիմ. բնույթով հակաբիոտիկների նման խումբ, որոնք առաջանում են ակտինոմիցետների խմբի մի շարք միկրոօրգանիզմներում: Ունեն լայն ընդգրկույթով հակամանրէային ազդեցություն: Օգտագործվում են որպես դեղանյութեր՝ թոքաբորբի, դիզենտերիայի ևնի բուժման նպատակով:

ՏԵՏՐԻԼ (եռնիտրաֆենիլմեթիլնիտրամին), բարձր փշրտողության *պայթուցիկ նյութ*, բաց դեղին բյուրեղ. փոշի: Պայթման ջերմությունը՝ 4,6 *ՄՋ/կգ*: Զգայուն է հարվածի, շփման, կայծի նկատմամբ: Օգտագործում են պատիճ–ճայթիչներում և պայթուցիկներում:

ՏԵՏՐՈԴ [< *տետրա...* և (*էլեկտր*)*ոդ*], **քառէլեկտրոդ, էլեկտրոնային լամպ.** կազմված է ջերմաէլեկտրոն. կաթոդից (ուղղակի կամ անուղղակի շիկացման), 2 ցանցից (կառավարող և էկրանավորող) և անոդից: Նախատեսված է ռադիոընդունիչ և ռադիոհաղորդիչ սարքերում՝ որպես ընդունիչ-ուժեղացուցիչ, կամ մինչև 100 *ՄՀց* հաճախություններում՝ որպես *գեներատորային լամպ*:

ՏԵՐ ԱՎԵՏԻՄ, 1720-ական թթ–ի Սյունիքի ազգ-ազատագր. շարժման գործիչ: Սկզբում ընդդիմացել է ***Դավիթ Բեկի*** իշխանությանը, որի համար ձերբակալվել է: Ազատվել է ***Ական Յուզբաշու*** միջնորդությամբ, դարձել Դավիթ Բեկի մերձավոր զինակիցը: Աչքի է ընկել Զևու բերդի գրավման (1723) ժամանակ, թուրք զորքերի դեմ Հալիձորի ճակատամարտում (1727) ևն: Տ. Ա. ***Մխիթար Սպարապետի*** հետ թուրք. նվաճողներից ազատագրել է Մեղրին, Օրդուբադը և Ագուլիսը: Որպես ուխտավոր՝ այցելել է Երուսաղեմ, որտեղից մեկնել է Վենետիկ, Ղուկաս Սերաստացուն վերապատմել է Դավիթ Բեկի պատմությունը:

ՏԵՐԱ... (հուն.՝ teras – հրեշ), նախածանց՝ նախնական միավորների 10^{12} բազմապատիկն անվանելու համար. նշանակում են T, օր.՝ 1 *ՏՆ* (տերանյուտոն) = 10^{12} *Ն*:

ՏԵՐ-ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Արմենակ Եփրեմի (1898–1957), երգիչ (տենոր): ՀԽՍՀ ժող. արտիստ (1954): 1937–41-ին՝ ԵՕԲԹ-ի (Սարո՝ Ա. Տիգրանյանի «Անուշ», Սեթո՝ Հ. Ստեփանյանի «Լուսաբացին», ևն), 1941–1952-ին՝ Հայաստանի հեռուստառադիոյի ժող. գործիքների անսամբլի մենակատար: Երգացանկում՝ նաև հայկ. ժող. և աշուղ. երգեր («Ես սարեն կուգայի», «Պաղ աղբյուրի մոտ», Կոմիտասի «Կռունկ», «Անտունի» ևն):

ՏԵՐ-ԱԶԱԴԵՎ (Տեր-Ազատյան) Իոսիֆ Ալեքսանդրի (1921–2008), ճարտարագետ-մեխանիկոս: Գրիգոր ***Տեր-Ազատյանի*** հայրը: Տեխ. գիտ. դ-ր (1967), պրոֆ. (1970): ՀՀ վաստ. ճարտարագետ (1960), ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2004): 1961–75-ին՝ Երևանի Քարի և սիլիկատների ԳՀԻ փոխտնօրեն: Աշխ-ները վերաբերում են քարակտրիչ մեքենաների աշխ. հանգույցների հաշվարկի եղանակների և նոր կառուցվածքների, բնական քարերի, մետաղ. և ոչ մետաղ. նյութերի մշակման, ալմաստե գործիքների ստեղծման հարցերին:

ՏԵՐ-ԱԶԱՏՅԱՆ Գրիգոր Իոսիֆի (ծ. 1951), մեխանիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1992): Իոսիֆ ***Տեր-Ազատի*** որդին: 1988–93-ին՝ «Ալմաստ» գործարանի գլխ. տնօրեն: Աշխ-ները վերաբերում են արհեստ. ալմաստի սինթեզին, ալմաստե գործիքների ստացմանը, փոշեմետալուրգիային, մետաղ. և ոչ մետաղ. նյութերի մշակմանը:

ՏԵՐԱԿՈՏԱ (իտալ.՝ terra cotta, < terra – հող, կավ և cotta – թրծված), **թրծուն, թրծակավ**, չջնարակված գունավոր, ծակոտկեն մակերեսով գեղ. և կիրառ. խեցեղեն կերտվածքներ (անոթներ, սկահակներ, քանդակներ, խաղալիքներ ևն): Հայտնի է նոր քարի դարից: Կիրառվում է նաև ժամանակակից քանդ-յան մեջ:

ՏԵՐ-ԱՂԵՔՍԱՆԴՐՅԱՆ Գևորգ Դավթի (1840–1890), բանահավաք-ազգագրագետ, գրող, խմբ.: 1866–67-ին՝ Թիֆլիսի ***«Վաճառական»*** պարբ-ի խմբ-հրտ.: Հեղինակ է «Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը» (1885) բանահյուս. ժող-ի, որ պարունակում է շուրջ 6700 առած-ասացվածք, երգ, հեքիաթ-հանելուկ, աղոթք, անեծք ևն, չափածո և արձակ գործերի, գրախոսությունների (տպագրվել են թիֆլիսահայ պարբ-ներում): Կատարել է թարգմ-յուններ (ռուս-ից):

ՏԵՐ-ԱՆԴՐԵԱՍՅԱՆ Երվանդ Գրիգորի (1865–1945), բանասեր, հրապարակախոս, թարգմանիչ, խմբ.: Կ. Պոլսի «Հանրագիտակ», «Օրագիր», «Առաւօտ», «Նոր կեանք» պարբ-ների խմբագրապետ: 1922-ից՝ Բուլղարիայում, ապա՝ Ֆրանսիայում: Աշխարհաբարի է փոխադրել շարականներ («Շարականք հայ Ս. Եկեղեցւոյ», հ. 1, 2, 1902, 1904), թարգմանել է Ֆ. Վերֆելի «Մուսայ լեռան քառասուն օրերը» (հ. 1–2, 1935), Կ. Բրեֆինի «Քրիստոս Ինքնակալ» (հրտ.՝ 1967) պատմավեպը:

ՏԵՐ-ԱՆԴՐԵԱՍՅԱՆ Հրանտ Միհրանի (1892–1978), գրականագետ, պատմաբան, թարգմանիչ: Հեղինակ է «Պատմության վերաբերյալ հայկական աղբյուրներ» (1950), «Զալալիների ապստամբությունները ըստ հայկական մի աղբյուրի» (1963), «ԺԴ և ԺԵ դդ. թուրքական պատմության վերաբերյալ հայերեն մանր ժամանակագրություններ ու հիշատակարաններ» (թուրք., 1973) աշխ-ների, թուրք. թարգմանել և ծանոթագրություններով ու մեկնաբանություններով լույս է ընծայել Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի, Ղ. Ինճիճյանի, Գրիգոր Ակներցու, Սիմեոն Լեհացու, Գ. Օղուլլուխյանի, Պետրոս դի Սարգիս Գիլանենցի աշխ-ները: Թարգմանել է նաև ֆրանս-ից, անգլ-ից, ռուս-ից:

ՏԵՐ-ԱՆՏՈՆՅԱՆ Վալերի Մկրտչի (1942–2003), ֆիզիկոս-տեսաբան: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1985), պրոֆ. (1987): Աշխ-ները վերաբերում են տարր. մասնիկների ֆիզիկային (ֆոտոն-հադրոն. փոխազդեցություններ), քվանտ. համաչափությունների տեսությանը (ոչ աբելյան մոնոպոլների տեսություն), մաթ. վիճակագրությանը (վիճակագր. մեթոդների կիրառում քվանտ. համաչափություններում):

ՏԵՐ-ԱՌԱՔԵԼՅԱՆ Վահան Խաչատուրի (1883–1941), երգիչ (տենոր), թարգմանիչ: Երգել է Կոմիտասի երգչախմբում, Ս. Պետերբուրգի Սարիինյան թատրոնում և տեղի հայկ. եկեղեցու երգչախմբում: Երգացանկում՝ Կոմիտասի, Ռ. Մելիքյանի, Սայաթ-Նովայի երգերից: Թարգմանել է Լ. Ն. Տոլստոյի «Աննա Կարենինա», Յ. Հաշեկի «Քաջ զինվոր Շվեյկի արկածները», Դ. Ա. Ֆուրմանովի «Խռովություն» և այլ գործեր: Հեղինակ է պատմվածքների, առակների և բանաստեղծությունների, Կոմիտասի մասին հուշերի («Անհիշաչար մարդը», «Կոմիտաս», ժող-ներ, 1931): 1937-ին անհիմն բռնադատվել և աքսորվել է, հետմահու (1957)՝ արդարացվել:

ՏԵՐ-ԱՍԱՏՐՅԱՆ (Տեր-Ասատուրով) Պողոս Հովհաննեսի (Պոլ Աստուր, 1866–1916), նկարիչ: Հեղինակ է դիմանկարների (կոմպոզիտոր Գ. Ղորղանյանի), գծանկարների («Կովկասյան հայ զինվորը», 4 գրչանկար), «Գարուն» գրչանկարի, պատկերազարդումների, նաև «Գեղարվեստական ալբոմ հայազգի գործիչների» (1891, 20 դիմանկար, վիմագրություն) ալբոմի: Տ-Ա-ի «Բրետանուհի» նկարը ՀԱՊ-ում է:

ՏԵՐ-ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ Հովսեփ Անդրեյի (1886–1938), հիդրոէներգետիկ: Հայաստանում հիդրոէներգետիկայի և հիդրոտեխնիկայի հիմնադիրներից: 1922–25-ին՝ Շիրակի ոռոգման ջրանցքի և Լենինյան ջրէկլի շին-յան պետ և գլխ. ճարտարագետ: Ղեկավարել է Սևան-Հրազդան կասկադի ջրէկների, Սևանա լճի ջրերի օգտագործման նախագծերի կազմման, Սևանի և Գյումուշի ջրէկների շին-յան նախապատրաստ. աշխ-ները: Կազմակերպել և ղեկավարել է կառուցվածքների ինստ-ը և հիդրոէլեկտրանախագծ. բաժանմունքը: 1937-ին բռնադատվել է, մահացել է Երևանի բանտում, հետմահու՝ արդարացվել:

ՏԵՐ-ԱՎԱՆԵՍՅԱՆ Դավիթ Վարդանի (1909–1979), բուսաբույծ: Կենսբ. գիտ. դ-ր (1951), պրոֆ. (1953): 1956–59-ին Հնդկաստանում եղել է ԽՍՀՄ դեսպանության գղտ. հարցերի գծով խորհրդական, 1965–66-ին՝ ՄԱԿ-ի աշխ-ի միջազգ. կազմակերպման կոմիտեի գղտ. դեպարտամենտի, 1970–79-ին՝ ԽՍՀՄ ԳԱ Լենինգրադի գրադարանի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են բամբակենու ընտրասերման հարցերին:

ՏԵՐ-ԱՎԵՏԻՄՅԱՆ Սմբատ Վարդանի (1875–1943), պատմաբան, հնագետ, մանկավարժ: Պատմ. գիտ. դ-ր (1936): Կազմել է Նոր Ջուղայի հայկ. ձեռագրերի («Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր-Ջուղայի ամենափրկիչ վանքի», հ. 1, հրտ.՝ 1970), նաև Նախավկայի վանքի 300 ձեռագրերի ցուցակները: Հավաքել է Հայաստանի և հայկ. գաղթավայրերի արձանագրությունները և կազմել հայկ. վիմագիր արձանագրությունների ժող.: 1915–17-ին գործուղվել է Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգներ, որտեղ հավաքել է ավելի քան հազար ձեռագիր, պատմ. վավերագրեր և ազգագր. նյութեր:

ՏԵՐ-ԱՎԵՏԻՔՅԱՆ Աննա Տիգրանի (1908–2013), ճարտ.: ՀՀ վաստ. ճարտ. (1968): Կոստանդին ***Հովհաննիսյանի*** կինը: Տ-Ա-ի նախագծերով Երևանում կառուցվել են բնակելի տներ (1947, 1948), վարչ. շենքեր (1953) ևն:

Կին ճարտ-ների ստեղծագործության համամիութ. ստուգատեսների (1938, 1956) դափնեկիր, Ա. Թամանյանի անվ. ոսկե մեդալ (2002):

ՏԵՐ-ԱՎԵՏԻՔՅԱՆ Զարեհ Ավետիքի (ծ. 1944), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (1988), պրոֆ. (1990): ՀՀ ԱՆ բժշկ. վիրաբուժ. կենտրոնի տնօրեն (2003-ից): ՌԲՏԳԱ (1998), ՀՀ ԲԳԱ (2009) անդամ: Աշխ-ները վերաբերում են մարսող. համակարգի և որովայնի խոռոչի մյուս օրգանների վերականգնող. վիրաբուժության հարցերին: Երևանի (1995–2007) և ՀՀ ԱՆ (1998–2005) գլխ. վիրաբույժ:

ՌԲԳԱ Ս. Վ. Չիժեսկու անվ. (2001), ԱԱԻ (2000) ոսկե մեդալներ:

ՏԵՐ-ԱՎԵՏԻՔՅԱՆ Ստեփան Քրիս-տափորի, **Ավետիքյանց-Բանանցեցի** (1868–1937), գրող, հրապարակախոս, հաս. գործիչ: 1907-ին ընտրվել է Ռուսաստանի II Պետ. դումայի պատգմ.: Հեղինակ է գեղ-վավերագր. գործերի, որտեղ պատկերել է գյուղի սոցիալ. կյանքը, սովորույթները («Նահատակը», 1898, «Չարաբաստիկ թուղթը», 1913, «Օրհնվի նրա եկած ճամփան», 1921, ևն):

ՏԵՐԱՏՈՄԱ (հուն.՝ teras, սեռ. հոլ.՝ teraros – այլանդակ և ...*ոմա*), բարորակ ուռուցք. առաջանում է սաղմն. զարգացման խախտման հետևանքով: Որպես կանոն՝ կազմված է բազմաթիվ հյուսվածքներից՝

էպիթել., մկան., նյարդ. ևն, որնք ներառվում են տարբերակված անանցուկներում (մազեր, ատամներ ևն):

ՏԵՐԲԻՈՒՄ (Terbium), Tb, տարրերի պարբեր. համակարգի III խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 65, ա. զ.՝ 158,9254, լանթանիդ է: Անջատվել է իտրիումային հողում և անվանվել է շվեյցար. Իտերբի գ–ի անունով: Արծաթասպիտակավուն մետաղ է, խտ.՝ 8,272 $գ/սմ^3$, $t_{հալ.}$՝ 1450°C:

ՏԵՐԲՈՐԽ (Terborch) Գերարդ (1617–1681), նիդեռլանդացի գեղանկարիչ: Ստեղծել է ժանր. կոմպոզիցիաներ քաղաքի ունևոր խավի կյանքից («Մեկ գավաթ լիմոնադ», մոտ 1665), որոնք աչքի են ընկնում արծաթավուն գուներանգի նրբաճաշակությամբ, իրերի ֆակտուրայի փոխանցման վարպետությամբ:

ՏԵՐԲՐՅՈՒԳՀԵՆ (Terbrugghen) Հենդրիկ (1588–1629), նիդեռլանդացի գեղանկարիչ: Հեղինակ է ժանր. կիսաֆիգուրների («Ծիլցտահարը», 1627), կրոն. և դից. թեմաներով կոմպոզիցիաների («Մատթեոսի խոստովանությունը», 1621):

ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Սահակ Միրզայի (1886–1937), քաղ., պետ., կուս. գործիչ: ՌՍԴԲԿ անդամ (1902): Բաքվի կոմունայի ժամանակ՝ նավթի բաշխման ու վաճառքի կոմիսար և արտակարգ հանձնաժողովի նախագահ: 1921–ից՝ ՀԽՍՀ լիազոր ներկայացուցիչ ՌԽՖՍՀ-ում (Մոսկվա), 1923–28–ին՝ ԱԽՖՍՀ-ում: 1928–35–ին՝ ՀԽՍՀ ԺԿԽ նախագահ, միաժամանակ՝ ԱԽՖՍՀ ԺԿԽ փոխնախագահ: Անհիմն բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ՏԵՐ-ԳԱԼՍՏՅԱՆ (Գալստյան) Ալբերտ Արամայիսի (ծ. 1931), մանկաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1971), պրոֆ. (1972), ԱԱԻ պատվ. պրոֆ. (1998): ՀՀ–ում մանկ. սրտաբանության հիմնադիրներից: Աշխ–ները վերաբերում են երեխաների ռևմատիզմի, սրտի ֆիզիոլոգիայի, ախտաբանության, ռիթմի խանգարումների, շարակց. հյուսվածքի դիսպլազիայի խնդիրներին: Ներդրել է հետազոտության էլեկտրա–, ձայնա–, սպեկտրա– և էխոսրտագրության, կոլագեն. հիվանդությունների ու նորածինների ներարգանդ. վարակների բուժման նոր մեթոդներ: ՀՀ ԱՆ գլխ. մանկ. սրտաբան–հոդաբան (1973–94):

ԵՊԲՀ ոսկե մեդալ (2005), ՌԳԱ Մ. Վ. Լոմոնոսովի անվ. մրց. (2006):

ՏԵՐ-ԳԱՍՊԱՐՅԱՆ Գևորգ Անդրեյի (1903–1949), ԽՍՀՄ բանակի գեն–լեյտ. (1949): ՀՄՊ–ի սկզբին, որպես Հվ–արմ. ռազմաճակատի 21–րդ բանակի 227–րդ հրաձգ. դիվիզիայի հրամ., մասնակցել է Ուկրաինայի պաշտպ–յանը: 1942–ի օգոստ–ին նշանակվել է 21–րդ բանակի հրամ–ի տեղակալ, ապա՝ 60–րդ բանակի շտաբի պետ: 1945–ի հուլիսից՝ Կիևի ռազմ. օկրուգի շտաբի պետ և զորքերի հրամ–ի 1–ին տեղակալ:

ՏԵՐ-ԳԵՎՈՐԳՅԱՆ Շահե Նազարի (1944–1998), ճարտ., ճարտ–յան պատմաբան: Ուսումնասիրել է Հալեպի Սբ Քառասուն Մանկանց եկեղեցու ստորգետնյա մասը, քաղաքամերձ շրջանում կառուցել շենքեր, մշակել արլ. երկրների ավանդ. ներքին բակերով բնակելի տների արդիականացման սկզբունքներ, առաջադրել է տեսակետ, ըստ որի՝ Հայաստանի բազիլիկների ճարտ–յունը ձևավորվել և զարգացել է ինքնուրույն:

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ Աշոտ Երեմի (1927–1988), մանկավարժ: Մանկավարժ. գիտ. դ–ր (1972), պրոֆ. (1974): ՀԽՍՀ բարձրագույն դպրոցի վաստ. գործիչ (1982): Աշխ–ները վերաբերում են հայոց լեզվի ուսուցմանը, մեթոդիկային, հայ մանկավարժության պատմությանը:

ՅՈՒՆԵՍԿՕ–ի «Ժպիտի շքանշան» (1980), Մոնդ–ի Մեսրոպ Մաշտոցի անվ. հուշամեդալ (1985):

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ Արա Աշոտի (ծ. 1953), առողջապ–յան կազմակերպիչ: Բժշկ. գիտ. դ–ր (2003), պրոֆ. (2006): Աշխ–ները վերաբերում են ՀՀ–ում բժշկ. օգնության կազմակերպման և ֆինանսավորման վերափոխումների գիտ. հիմունքներին՝ նոր տնտ. հարաբերությունների պայմաններում:

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ Գրիգոր (Գիգի) Արամի (1916–1981), դրամատուրգ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1962): 1951–55–ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար, *«Գրական թերթի»* խմբ., 1955–81–ին՝ *«Ոզնի»* հանդեսի խմբ.: Հեղինակ է «Գարնան անձրև» (1962), «Տասը տարի» (1969), «Իմ խեղճ Պորտոս» (1977) պիեսների ժող–ների: Տ–Գ–ի մի շարք պիեսներ բեմադրվել են:

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ Էմին Հովակիմի (1855–1939), դրամատուրգ, հրտ., մշակույթի գործիչ: Հայաստանի Առաջին պետ. թատրոնի հիմնադիրներից: 1876–ին Զաքարիա *Գևորգյանի* հետ հիմնադրել է Երևանում առաջին տպարանը (1880–ից՝ սեփականատեր), որը գործել է մինչև 1910–ական թթ., տպագրել շուրջ 30 անուն գիրք (այդ թվում՝ Տ–Գ–ի հեղինակ. և թարգմ. գործերը), պարբ–ներ: Հեղինակ է «Թռչնիկ» (1876) բանաստեղծությունների ժող–ի, նաև վոդևիլների, կատակերգությունների, դրամայի:

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ Հովհաննես (Վանո) Հովհաննեսի (1851–1931), ռեժ., դերասան: Պեպոյի (Գ. Սունդուկյանի «Պեպո») առաջին դերակատարն էր Երևանում (1876): 1880–ական թթ–ի սկզբին իր սիրող. խմբով հանդես է եկել Թիֆլիսում, Բաքվում (Զամբախով, Սուրաթով՝ Սունդուկյանի «Խաթաբալա», «Էլի մեկ զոհ») ևն: Գ. Սունդուկյանն իր «Քանդած օջախ» պիեսը նվիրել է Տ–Գ–ին:

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ Միքայել Սովսեսի (1827–1868), դրամատուրգ, հաս. գործիչ: Կովկասյան բժշկ. ընկ–յան իսկ. անդամ, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի հոգաբարձու: Հեղինակ է «Դալալ Վաղո» (բեմ.՝ 1863), «Էս էլ քի մոցիքլութիւն...» (հրտ.՝ 1866), «Պառվներուն խրատ» (հրտ.՝ 1879) և այլ պիեսների (մի մասը՝ անտիպ):

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ (Հովհաննիսյանց) Ոսկան (1820–1910), բանասեր–աշուղագետ: Հավաքել, ուսումնասիրել և «Նոր քնար Հայաստանի» խորագրով առանձին պրակներով լույս է ընծայել Ազբար–Ադամի (1855), Շիրինի (1856), Նիրանու (1856), Սեյադի (1859) և ուր. ստեղծագործություններ:

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ Զալալ Հովհաննեսի (1866–1940), մանկավարժ, թարգմանիչ: ՀԽՍՀ աշխ. հերոս (1931): Ուսուցիչ և տեսուչ է եղել Ախալքալաքի, Զալալօղլու, Դիլիջանի, Ստավրոպոլի դպրոցներում, մասնակցել է «Վերնատան», Թիֆլիսի Հայոց հրտչ. ընկ–յան աշխ–ներին: Հեղինակ է «Պեստալոցցի» մենագրության, նաև վիպակների, ակնարկների, հոդվածների: Կատարել է թարգմ–յուններ:

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ Վահիկ Զալալի (1902–1965), նկարչուհի: Հեղինակ է դիմանկարների («Ինքնանկար», 1945, «Բայրոն», 1965, ևն), նատյուրմորտների («Նատյուրմորտ», 1964, ևն), թեմատիկ պատկերների («Կովկասյան պար», 1945, բոլորը՝ ՀԱՊ), որոնց բնորոշ են գույների զուսպ զուգորդումը, ռոմանտիկ շունչը:

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ Յ Նորատ Գրիգորի (ծ. 1936), ռազմ. գործիչ, գեն–լեյտ. (1985): 1981–83–ին՝ Աֆղանստանում խորհրդ. բանակի հրամ–ի 1–ին տեղակալ, շտաբի պետ, 1983–91–ին՝ ԽՍՀՄ ցամաք. զորքերի ԳՇ պետ, գլխ. հրամ–ի տեղակալ: 1992–95–ին՝ ՀՀ ԶՈՒ հրամ., ԳՇ պետ և ՀՀ պաշտպ–յան նախարարի 1–ին տեղակալ: Մասնակցել է նաև ՂԱՊ–ի առանձին ռազմ. գործողությունների պլանների մշակման և բանակաշինության աշխ–ներին: 1993–ից՝ Մոսկվայում: ՀՀ «Մր Վարդան Մամիկոնյան» (2016), Լենինի, Կարմիր դրոշի և Կարմիր աստղի շքանշաններ:

ՏԵՐ-ԳՐԻԿՈՒՐՈՎ Միխայիլ (Տեր–Գրիգորյան Միքայել, 1828–1897), վներաբան, Ռուսաստանում վներաբանության հիմնադիրներից: Բժշկ. գիտ. դ–ր (1859): 1859–ից Թիֆլիսում զբաղվել է գործն. բժշկությամբ: Տ–Գ–ի «Տղամարդկանց գոնոռեայի մասին» (ռուս., 1859) աշխ–ը գոնոռեայի կլինիկայի և բուժման վերաբերյալ առաջին ուսումնասիրությունն է Ռուսաստանում:

ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ Մերուժան Սարգսի (ծ. 1948), գրող, հրապարակախոս, խմբ.: 1986–90–ին՝ *«Գարուն»*, 1990–96–ին՝ *«Ասպնջակ»*, 2006–09–ին՝ *«Դե ֆակտո»* պարբ–ների խմբ., 2012–ից՝ «Անդին» գրգեղ., հաս–քաղ. ամսագրի հիմնադիր–խմբ.: 1997–2004–ին՝ «Ար» հեռուստաընկ–յան հիմնադիր–նախագահ, 2009–11–ին՝ «Արարատ» հեռուստաընկ–յան տնօրեն, 2011–ից՝ Հանր. հեռուստառադիոընկ–յան խորհրդի անդամ: Հեղինակ է «Մաղամո լիճը» (1978), «Տղամարդկանց երկիրը» (ռուս., 1982), «Մնացող հողն ու գնացող մարդիկ» (1983), «Զրո ժամ» (1995) պատմվածքների, էսսեների, փաստագր. վիպակների, «Գիշերային վարդ» (2002), «Ցավի որսորդը» (2005) բանաստեղծությունների ժող–ների:

ՀԼԿԵՄ ԿԿ–ի (1978), ՀԳՄ Մ. Նալբանդյանի անվ. (1980) մրց–ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2011), Ախալքալաքի և Երևան ք–ի պատվ. քաղաքացի (երկուսն էլ՝ 2014):

ՏԵՐ-ԴԱՆԻԵԼՅԱՆ Միսակ Դանիելի, **Արամայիս** (1874–1954), ազգ–ազատագր. շարժման գործիչ, գրող, հրապարակախոս, թարգմանիչ: 1890–ականների կեսերից Մարտիրոս *Սարուխանյանի* ջոկատում կռվել է Վանում, Շատախում, Մոկքում, Արաքսի հովտում: 1905–06–ին Արցախում մասնակցել է հայ–թաթար. բախումներին: 1917–ին ընտրվել է Բաքվի ՀԱԽ–ի անդամ: 1949–ին ընտանիքով աքսորվել է Ալթայի երկրամաս: Տ–Դ–ի ստեղծագործությունները հիմնականում նվիրված են հայ ազգ–ազատագր. պայքարին: «Զարհուրելի ոճիր» (1916) գիրքը թարգմանվել է ֆրանս., գերմ., իտալ.:

ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ Գևորգ Զաքարի (1850–1934), դերասան: ՀԽՍՀ ժող. արտիստ (1925): Հայ թատրոնի նշանավոր կատակերգակ դերասաններից: 1872–ից խաղացել է Թիֆլիսում (Իսայի՝ Գ. Սունդուկյանի «Խաթաբալա», Դոբչինսկի՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», Օրգոն՝ Մոլիերի «Տարտյուֆ», ևն): Լավագույն դերը Գիքոն էր (Գ. Սունդուկյանի «Պեպո»):

ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ Համայակ Թադևոսի (1901–1937), կուս. աշխատող, կարմիր բանակի կոմիսար (1936): 1928–33-ին՝ Հայկ. հրաձգ. դիվիզիայի 2-րդ գնդի կոմիսար, ապա՝ քաղբաժնի պետ: 1933–37-ին՝ Անդրկովկաս. ռազմ. հետևակ. դպրոցի կոմիսար և դպրոցին կից ռազմաքաղ. դասընթացի պետ:

ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ Հովսեփ Գևորգի (1862–1938), դաշնակահար, մանկավարժ: 1894-ից Այսրկովկասի քաղաքներում տարածել է հայկ. դաշնամուր. երաժշտությունը (նվագացանկում՝ Մ. Բարխուդարյանի, Ն. Տիգրանյանի, Ա. Մայիլյանի, Կ. Զաքարյանի և ուր. երկերից): Թիֆլիսում հիմնադրել է մասնավոր երաժշտ. դպրոց:

ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ-ԱՐԵՎՇԱՏՅԱՆ Քնարիկ Սուրենի (ծ. 1926), բանասեր, պատմաբան, թարգմանչուհի: Բանասիր. գիտ. դ-ր (1996): Սեն *Արևշատյանի* կինը: Հեղինակ է «XI–XV դարերի հայ վարքագրությունը» (1980), «Վկայաբանություն և վարք» («Հայ միջնադարյան գրականության ժանրեր», 1984, ժող.) աշխ-ների, կազմել և հրատարակել է «Աղբյուրներ միջնադարյան Հայաստանի բարձրագույն դպրոցների պատմության (XII–XV դդ.)» (ռուս., 1983), «Հայելի վարուց» (1994), «Բանք իմաստասիրաց» (2001) ուսումնասիրությունները, ռուս. է թարգմանել վարքեր, վկայաբանությունների բնագրեր՝ առաջաբաններով և ծանոթագրություններով:

ՏԵՐԵԲԵՆՅՈՎՆԵՐ, ռուս. քանդ-ներ, կլասիցիզմի մոնումենտալ-դեկորատիվ քանդ-յան վարպետներ: **Իվան Իվանովիչ S.** (1780–1815), հեղինակ է Ս. Պետերբուրգի Ծովակալության շենքի դեկորատիվ քանդակների (1812–13), Նապոլեոնին և նրա բանակին վերաբերող ծաղրանկարների (1812–15): Որդին՝ **Ալեքսանդր S.** (1815–1859), հեղինակ է Ս. Պետերբուրգի Նոր Էրմիտաժի շենքի ատլանտների և հերմաների (1844–49):

ՏԵՐԵԽՈՎԱ Մարգարիտա Բորիսովնա (ծ. 1942), ռուս. դերասանուհի: ՌԴ ժող. արտիստ (1996): 1964-ից (ընդհատումներով)՝ Մոսկվայի Մոսսովետի անվ. թատրոնի դերասանուհի: Խաղացել է Լ. Գ. Զորինի «Թագավորական որս», Ս. Ի. Ալյոշինի «Թեմա՝ վարիացիաներով», «Սիրելի բարեկամ» (ըստ Գի դը Մոպասանի) և այլ ներկայացումներում: Նկարահանվել է «Բարև, ես եմ» (Հայֆիլմ), «Մենախոսություն», «Ցերեկային գնացք», «Թագ», «Հայելի», «Ճայ» (2005, Արկադինայի դերում և ռեժ.՝ Տ.) «Պարտիզպանի շունը» (հեռուստաֆիլմ) և այլ ֆիլմերում:

ՏԵՐԵԽՈՎՍԿԻ Մարտին Մատվեևիչ (1740–1796), ռուս. բժիշկ և բնագետ: Ռուսաստանում առաջին նախակենդանաբանը: 1783-ից՝ Ս. Պետերբուրգի բուսաբ. այգու տնօրենը: Հերքել է օրգանիզմների ինքնաբերաբար սաղմնավորվելու հնարավորությունը:

ՏԵՐ-ԵՂԻԱԶԱՐՈՎ Գեորգի Միխեյի (1923–1994), մանկ. վնասվածքաբան-օրթոպեդ: Բժշկ. գիտ. դ-ր (1968), պրոֆ. (1970): ՌԴ գիտ. վաստ. գործիչ (1982): Աշխ-ները վերաբերում են ազդրի բնածին հոդախախտման և մանկ. վնասվածքաբանության հարցերին: Առաջարկել է ազդրոսկրի ոսկրահատման նոր մեթոդ՝ իր ստեղծած հարթակի կիրառմամբ: Զբաղվել է ներհոդ. և խողովակավոր ոսկրերի միջին մասի կոտրվածքների ու դրանց բարդությունների բուժման հարցերով:

ՏԵՐԵՆՏԵՎ Ալեքսանդր Պետրովիչ (1891–1970), ռուս քիմիկոս-օրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1953): Աշխ-ները վերաբերում են օրգ. ֆունկցիոնալ վերլուծության եղանակներին, տարացիկլ. միացությունների քիմիային, տարածաքիմիային և օրգ. միացությունների անվանակարգությանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1948):

ՏԵՐԵՇԿՈՎԱ Վալենտինա Վլադիմիրովնա (ծ. 1937), աշխարհում առաջին կին տիեզերագնացը, գեն-մայոր (1995): ԽՄ հերոս (1963): Թռիչք է կատարել «Վոստոկ-6»-ով (1963-ի հունիս): Խորհրդ. կանանց կոմիտեի նախագահ (1968–87), Կանանց միջազգ. դեմոկրատ. միության փոխնախագահ (1969-ից): 1987–92-ին՝ Արտ. երկրների հետ բարեկամության և մշակույթի խորհրդ. ընկ-ների միության նախագահ: 1994–2004-ին՝ գիտ. և մշակութ. միջազգ. համագործակցության ռուս. կենտրոնի ղեկ.: ՌԴ Պետ. մրց. (2008):

ՏԵՐԵՎ, բարձրակարգ բույսերի օրգան. կատարում է լուսասինթեզման, գոլորշիացման և գազափոխանակության ֆունկցիաներ: Բաղկացած է տերևաթիթեղից և հիմքից, որը ներկայացված է տերևաբարձիկով կամ լայնացած բունցով: Տերևաթիթեղի և հիմքի միջև հաճախ ունի տերևակոթիկ: Տ-ի միջուկը (մեզոֆիլ), որի հաստության միջով անցնում են ջղերը, ծածկված են էպիդերմիսով: Կանաչ գույնը պայմանավորված է քլորոֆիլով: Տ-ի ձևը տեսակի հատկանիշ է: Հաճախ Տ. փոխակերպվում է բեղիկների, փշերի թեփուկների: Տ-ի չափը մի քանի *մմ*-ից մինչև 20 *մ*: Կյանքի տևողությունը ամենաքիչը 1 տարի է, ոչ հաճախ՝ 2–5, հազվադեպ՝ 25 և ավելի տարիներ (Շրենկի եղևնի):

ՏԵՐԵՎԱԼՎԻԿՆԵՐ, **պղնձաբզեզներ**, հավասարաթևների կարգի միջատների ենթակարգ: Երկ.՝ 1,5–6 *մմ*: Հայտնի է 2000-ից ավելի տեսակ: Մի շարք տեսակներ մնասում են պտղատու ծառերը և բանջարանոց. մշակաբույսերը: Տ-ի քաղցր և կպչուն արտաթորանքների (մեղրացող) վրա բնակություն են հաստատում սնկերը, որոնք աղտոտում են ընձյուղները, տերևները և պտուղները:

ՏԵՐԵՎԱԿԵՐՆԵՐ (Chrysomelidae), բզեզների ընտանիք: Երկ.՝ մինչև 2 *սմ*: Հայտնի է մոտ 50 հզ. տեսակ՝ տարածված լայնքրեն: Մնվում են հիմնականում տերևներով, շատերը մնասում են մշակաբույսերը (կոլորադյան բզեզ, բարդու, խաչածաղկավորների լվիկները, ճակնդեղի վահանակիր ևն):

ՏԵՐԵՎԱՊՏԵՐ, **եղջերալեզու** (Polypodiaceae), բազմոտիկազգիների ընտանիքի բազմամյա բույսեր (պտերներ): Հայտնի է 9 տեսակ, ՀՀ-ում՝ 1՝ Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի, Լոռու մարզի լեռներում և ստվերոտ ժայռաճեղքերում: Դեղաբույս է:

ՏԵՐԵՎԱՏ, **գայլախոտ** (Thymelaeaceae), գոճմակազգիների ընտանիքի մշտադալար կամ տերևաթափ թփերի ցեղ: Հայտնի է մոտ 100 տեսակ, ՀՀ-ում՝ 5՝ Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի և այլ մարզերում: Դեղաբույս է. պարունակում է գլիկոզիդներ, ճարպայուղ, շաքար, սապոնիններ ևն: Պատրաստուկներն օգտագործում են խիթերի, ստամոքսաղիք. և մաշկ. որոշ հիվանդությունների ժամանակ: Դեղազարդիչ է և մեղրատու:

ՏԵՐԵՎԱԼՈՐՆԵՐ (Tortricidae), ցեցանման թիթեռների ընտանիք: Ոչ մեծ թիթեռներ են, թևերի բացվածքը՝ 0,8–4 *սմ*: Հայտնի է ավելի քան 5 հզ. տեսակ: Տ-ի մեծամասնության թրթուրները մնասատուներ են. տերևները փաթաթելով վերածում են խողովակի, որոշ տեսակներ զարգանում են պտուղներում (պտղակերներ): ՀՀ-ում հայտնի է 200-ից ավելի տեսակ՝ խնձորենու, սալորենու, խաղողի և այլ Տ.:

ՏԵՐԵՓՈՒԿ, բարդածաղկավորների (աստղածաղկազգիներ) ընտանիքի միամյա, երկամյա կամ բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 500 տեսակ, ՀՀ-ում՝ 46՝ Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Տավուշի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերում: Դեղաբույս է և մեղրատու: Մի քանի տեսակներ գեղազարդիչ են: ՀՀ-ում տարածված Տ-ի Արփի, հայաստանյան, լեզվանման, ֆեռպապուասանման տեսակները գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ Արկադի Իվանի, **Կոմանդոս** (Թադևոսյան Արտուշ Հովհաննեսի, ծ. 1939), ռազմ. գործիչ: ՀՀ բանակի գեն-մայոր (1992): Արցախի հերոս (2009): 1990-ից՝ Հայաստանում, «Մասունցի Դավիթ» կամավոր. ջոկատում, ապա ծառայել է ՀՀ ՊԿ-ում: 1991–92-ին նշանակվել է Արցախի ԻՊՈՒ-ի հրամ.: Տ-Թ-ի ղեկավարությամբ ազատագրվել են Արցախի մի շարք բնակավայրեր, կազմվել է Շուշիի ազատագրման պլանը («Հարսանիք լեռներում» ծածկանունով), ղեկավարել է 1992-ի մայիսի 8–9-ի գործողությունը: 1992–2001-ին ծառայել է ՀՀ ՊՆ-ում: 2001-ի դեկտ-ից՝ ՀՀ պաշտպ. մարզատեխ. ընկ-յան նախագահ:

ՀՀ (1996) և ԼՂՀ (2003) «Մարտական խաչ» 1-ին աստիճանի, ԼՂՀ «Ոսկե Արծիվ» (2009) շքանշաններ:

ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ Ջիվան (Ջոն) Գուրգենի (1926–1988), կոմպոզիտոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1980): Հեղինակ է սիմֆոնիաների (1957, 1959, 1963, 1984, 1987), սիմֆոնիետի (1983), ջութակի և նվագախմբի կոնցերտի (1977), լար. կվարտետների (1955, 1967, 1983, 1984), սիմֆ. պոեմների («Ե. Չարենցի հիշատակին», 1963, ևն), սիմֆ. սյուիտների, գործիք. պիեսների, վոկալ երկերի, կինոերաժշտության («Անցյալի արձագանքները», 1970, «Խնձորի այգին», 1985, երկուսն էլ՝ գեղ., Հայֆիլմ):

ՏԵՐԻԵՐՆԵՐ (անգլ.՝ terrier, < ֆրանս. chien terrier – որջաշուն), շների ցեղախումբ, որոնցով պայքարում են որջ և բույն ունեցող կենդանիների ու կրծողների դեմ: Ժամանակակից Տ. (մոտ 30 ցեղ) օգտագործում են նաև ծառայող. (օր.՝ էրդելտերիերներ) նպատակով:

ՏԵՐ-ԻՍՐԱՅԵԼՅԱՆ Ստեփան Պետրոսի (1848–1922), հրտ., գրավաճառ: 1866-ին հիմնադրել է Թիֆլիսի կենտր. գրավաճառանոցը («Գուտենբերգ»), որը խոշորագույնն էր Կովկասում: Հրատարակել է հայ. և ռուս. գրքեր, դասագրքեր, բառարաններ ևն, ուղեցույց-գրացուցակներ: Տ-Ի-ի գրավաճառանոցի հիմքի վրա ստեղծվել է վրաց. «Սախելգամի» հրտչ-յունը:

ՏԵՐ-ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ Արտաշես Համազասպի (1931–1993), մանկավարժ, մատենագետ, խմբ.: 1983-ից դասավանդել է Հալեպի, Բեյրութի, հայկ. դպրոցներում, վարժարաններում, Համազգ. հայագիտ. բարձրագույն ուս. հաստատությունում: 1980–84-ին՝ «Հասկ» տարեգրքի խմբ.:

Հեղինակ է հայ մամուլի և հայ գրքի վերաբերյալ մատենագիտ. և այլ աշխ-ների, բառարանների:

ՏԵՐ-ԽԱՉԱՏՈՒՐՈՎ Արկադի Համբարձումի (1927–1991), չափիչ տեխնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1975), պրոֆ. (1987): ԽՍՀՄ վաստ. գյուտարար (1987): Աշխ-ները վերաբերում են տեղեկույթի չափման, տեխ. արատորոշման, փորձի ավտոմատացման համակարգերին, չափումների ճշգրտության բարձրացման մեթոդներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1989):

ՏԵՐ-ԽԱՉԱՏՈՒՐՈՎ Արտեմ Հակոբի (1884–1964), էլեկտրաէներգետիկ: Պրոֆ. (1931): ՎԽՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1949): 1930–64-ին՝ Վրաց. պոլիտեխ. ինստ-ի էլեկտրակայանների և համակարգերի ամբիոնի վարիչ: Աշխ-ները վերաբերում են ջրի պաշարների ռացիոնալ օգտագործման, ՎԽՍՀ էլեկտրաէներգահամակարգի աշխ. ռեժիմների լավարկման հարցերին: Գլխավորել է Թբիլիսիի ջեկի նախագծման ու կառուցման աշխ-ները:

ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Զարեհ Արիստակեսի (1921–1996), դերասան: ՀՀ վաստ. արտիստ (1965): 1946-ին հայրենադարձել է: 1952–96-ին՝ ԵՊՀԹ դերասան (Պերչիխին՝ Մ. Գորկու «Քաղքենիներ», Ոսկան՝ Շիրվանզադեի «Զար ոգի», Գավրոշ՝ «Թշվառներ»՝ ըստ Վ. Հյուգոյի, ևն): Խաղացել է նաև հեռուստաթատրոնում (Գ. Խուգաևի «Անդրոն ու Սանդրոն» ևն), նկարահանվել կինոյում («Տժվժիկ», 1961, «Ապրիլ», 1985, «Ընկեր Փանջունի», 1992, ևն, բոլորը՝ Հայֆիլմ):

Դուստրը՝ **Հասմիկ Տ–Կ.** (ծ. 1954), դերասանուհի: 1971–91-ին՝ ԵԴԹ, ԵՊՀԹ, 2011-ից՝ Երևանի Կամեր. թատրոնի դերասանուհի (Սապատերա՝ Գ. Լորկայի «Զքնաղ Սապատերան», Հերո՝ Վ. Շեքսպիրի «Մեծ աղմուկ ոչնչից», ևն): Խաղացել է նաև հեռուստաթատրոնում (Ռ. Մարուխյանի «Եղեգնուհին» ևն), նկարահանվել կինոյում («Զայն բարբառոյ...», 1991, «Քրմուհին», 2007, երկուսն էլ՝ Հայֆիլմ, ևն): Հեղինակ է «Նամակ հայրիկիս, հասցեն՝ դրախտ» (2012) գրքի: ՀԼԿԵՄ մրց. (1983):

ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Հակոբ (ծ. 1948), հոգեբան, էթնիկ և ընկերային հարցերի մասնագետ: Լոուրենսի Կանզասի համալսարանի դ-ր (1978), Լա Վեռնի համալսարանի (Կալիֆոռնիա) պրոֆ. (1980): Աշխ-ները վերաբերում են հոգեբ-յանը, ազգ., միջազգ., էթնիկ, ընկերային, ինքնության հարցերին: Հայ-ից անգլ. է թարգմանել և հրատարակել Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշագրություններ:

ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Մկրտիչ Արտաշեսի (1910–1982), կենսաքիմիկոս: ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1956): 1972–81-ին եղել է Ֆրանսիայի Պիեռ և Մարի *Կյուրիների* անվ. համալսարանի կենսաքիմ. բաժանմունքի պրոֆ. և ղեկ.: Աշխ-ները վերաբերում են ՀՀ-ում տեխ. կենսաքիմիայի նոր ուղղության հետազոտություններին, բարձրակարգ ողնաշարավորների օրգանիզմում թիոսուլֆատի և սուլֆատի առաջացման բացահայտմանը, կենսաօրգ. միացությունների ազատ. փոխանակության քիմ. և կենսաքիմ. մեխանիզմներին:

ՏԵՐ-ԿՅՈՒՐԵՂՅԱՆ Արմեն Սմբատի (ծ. 1947), ճարտարագիտ. սեյսմոլոգիայի բնագավառի գիտնական: Փիլ. գիտ. դ-ր (1975), պրոֆ. (1985): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (1998): 1978–2001-ին՝ Բերկլիի (Կալիֆոռնիա) համալսարանի, 1991-ից՝ Հայաստանի ամերիկ. համալսարանի ճարտարագիտ. ֆակ-ի դեկան, ճարտարագիտ. հետազոտությունների կենտրոնի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են բացարձակ պինդ և ձևափոխվող մարմինների մեխանիկայի, կառուցվածքների տատանումների ու հուսալիության, շին. կառուցվածքների հաշվարկներում հավանականության տեսության մեթոդների կիրառման հարցերին:

ՀՃԱ (1994), Ամերիկայի քաղաք. ճարտ-ների (1975, Վ. Գյուրեղի անվ. մրց.՝ 1988), Սեյսմոլոգների (1955) միությունների անդամ:

ՀՀ «Սիվսես Խորենացի» մեդալ (2001):

ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ Սենեքերիմ Խաչատուրի, **Չելեպի** (1881–1937), բանաստեղծ, մանկավարժ: 1921–37-ին՝ Էջմիածնի մտնդ-ի տնօրենն. մեծապես նպաստել է մտնդ-ի հավաքածուի հարստացմանը: Անահատի պաշտամունքի զոհ:

ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ Վահագն Սերգեյի (ծ. 1958), կինոօպերատոր: Նկարահանել է վավերագր. («Սև խոռոչ», 1989, «Կյանք», 1993, «Սուրբ ծեսերի երկիրը», 2001, «Վավերագրողը», 2003), գեղ. («Կյանք ու կռիվ», 2016) ֆիլմեր: ՀՀ Պետ. (2003), ազգ. կինոյի «Ասահիտ» (2016) մրց-ներ:

ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅԱՆ (Տեր-Հարությանյան) Խորեն Հարությունի (1909–1991), քանդ., նկարիչ: Հեղինակ է անիմալիստ. («Բագե», 1955, ևն), այլաբան. («Արձագանք», 1948, ևն), դից. և աստվածաշնչ. («Կայեն», 1942, «Լեդա», 1943, ևն), հայկ. էպոսի («Սասունցի Դավթի ծնունդը», 1950, «Մհերը», 1976, ևն), ազատագր. պայքարի («Վարդան զորավար», 1963, ևն), Մեծ եղեռնի թեմաներով բարձրաքանդակների, գրաֆիկ. թերթերի շարքերի, նաև «Մեսրոպ Մաշտոց» (1964), «Արարատի մայրը» (1973), «Վերածնված Հայաստան» (1983, Երևանի Օղակաձև զբոսայգում) և այլ գործերի, որտեղ զուգորդել է ռեալիստ. և մոդեռնիստ. տարրերը: 1991-ից Էջմիածնում գործում է նրա թանգարանը:

ՀՆՄ Մ. Սարյանի անվ. մրց. (1971):

ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արամ Ավետիսի (1906–1995), աթլետ, մանկավարժ: Իգոր *Տեր-Հովհաննիսյանի* հայրը: Մանկավարժ. գիտ. դ-ր (1972), պրոֆ. (1972): ԽՍՀՄ ս. վ. վ. (1946), Համամիութ. կարգի մրցավար (1947): ԽՍՀՄ 1-ին սպարտակիադայի (1928) բարձրացատկի և սկավառակի նետման մրցանակակիր, սկավառակի նետման ԽՍՀՄ ռեկորդակիր (1933):

ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արամ Արտեմի (1886–1970), դիրիժոր, խմբավար: ՀԽՍՀ ժող. արտիստ (1956): 1918–37-ին՝ Լենինգրադի Փոքր թատրոնի ստուդիայի (1918–28-ին՝ ղեկ.) դիրիժոր: 1940–61-ին (ընդմիջումով)՝ Հայաստանի պետ. երգչախմբի գեղ. ղեկ. և գլխ. խմբ.: Վ. Ա. Մոցարտի «Ռեքվիեմի», Լ. վան Բեթհովենի «Իններորդ սիմֆոնիայի», Կոմիտասի «Հայր մեր»-ի և այլ գործերի առաջին կատարողն էր Հայաստանում: ԵԵԿԹ-ում պատրաստել ու ղեկավարել է արևմտաեվրոպ., հայկ. դաս. օպերետների ներկայացումներ: Ներկայացրել է հայ ինագույն շարականները (Արլ. Եվրոպայի ինագույն երաժշտության փառատոն, Լեհաստան, 1969):

ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գաբրիել, **Քաջբերունի** (1837–1920), գրող: Հեղինակ է «Տեր-Սարգիս» (հրտ.՝ 1938) ժող. վեպի, որտեղ պատկերել է հայ գյուղի սոցիալ. ծանր վիճակը, «Սուրբ Գևորգի ղուլը» («Մեղու Հայաստանի», 1872), «Զուխտ անիծեալ գերեզման» (անտիպ) վիպակների, ճամփորդ. նոթերի, հուշագրությունների, «Ստեփանոս Նազարեանցի շուրջը...» (1917) աշխ-յան:

ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Դայանա (Անահիտ) Հովհաննեսի (ծ. 1934), բանաստեղծուհի, թարգմանիչ, լրագրող: Գրում է անգլ.: Հեղինակ է «Ինչպես ընտրես քո անցյալը» (1978), «Ժամանակի մասին» (1987), «Հացի երգը, աղի երգը» (1990), «Վերադարձի օր» (հայ., 2002) բանաստեղծությունների ժող-ների: Անգլ. է թարգմանել Գրիգոր Նարեկացու, Նահապետ Քուչակի, Դ. Վարուժանի, Ե. Չարենցի, Գ. Էմինի բանաստեղծություններից:

ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Իգոր Արամի (ծ. 1938), մարզիկ, մարզիչ, մանկավարժ: մանկավարժ. գիտ. թեկնածու (1971), պրոֆ. (1996): ԽՍՀՄ ս. վ. վ. (1960), վ. մ. (1980): Արամ *Տեր-Հովհաննիսյանի* որդին: Հեռացատկի ԽՍՀՄ 12-ակի, Եվրոպայի 6-ակի չեմպիոն, աշխարհի երկակի (1962, 1967) ռեկորդակիր: 5 օլիմպ. խաղերի (1956, 1960, 1964, 1968, 1972) մասնակցած միակ հայ մարզիկը. նվաճել է 2 բրոնզե մեդալ (1960, 1964): 1972–83-ին՝ ԽՍՀՄ թեթև աթլետիկայի հավաքականի մարզիչ, 1983-ից՝ գլխ. մարզիչ:

Աթլետիկայի միջազգ. սիրող. ֆեդերացիայի փոխնախագահ (1980–ից): ՌԴ ֆիզ. կուլտուրայի սպորտի և տուրիզմի պետ. կոմիտեի (1993–2001), ՌԴ աթլետիկայի ֆեդերացիայի (2001–ից) փոխնախագահ:

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան:

ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆ Գրիգոր Նարիմանի (1914–2008), ճարտարագետ-էլեկտրիկ: Տեխ. գիտ. դ-ր (1960), պրոֆ. (1969): ՎԽՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1972): Ուսումնասիրել է էլեկտրաէներգիայի արտադր-յան հուսալիության և արդյունավետության բարձրացման խոշոր էլ. մեքենաների աշխ-ի ռեժիմները, կատարել Սևան–Հրազդան կասկադի էլեկտրակայանների գեներատորներն առանց ջրի (որպես համաժամանակյա գեներատորներ) օգտագործելու տես. և փորձարար. հետազոտություններ:

ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆ Էդգար Ղազարի (1912–1961), քիմիկոս, ճարտարագետ-տեխնոլոգ: ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1960): Ղազար *Տեր-Ղազարյանի* որդին: 1943–53-ին եղել է Երևանի սինթետիկ կաուչուկի գործարանի գլխ. ճարտարագետ: Նրա ղեկավարությամբ այդ գործարանում ներդրվել են էմուլսային պոլիմերման, քլորոպրենի արտադր-յան երկփուլ ռեկտիֆիկացման, քլորբենզոլի անընդհատ ստացման եղանակները: 1957–60-ին՝ Կիրովականի Ավտոմատիկա ԳՀԻ տնօրեն: 1959–61-ին՝ ՀԽՍՀ ԺՏԽ նախագահի առաջին տեղակալ: Տ–Ղ-ի ղեկավարությամբ 1958-ին հիմնադրվել է Հայքիմգիտնախագիծ (1967-ից՝ Կիրովականի Տ–Ղ-ի անվ. պոլիմերային սոսինձների) ինստ-ը:

ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան:

ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆ Ղազար Գրիգորի (1874–1958), քիմիկոս, ֆիզիկոս: Ֆիզ-մաթ. գիտ. դ-ր (1906), պրոֆ. (1935): Էդգար *Տեր-Ղազարյանի* հայրը: 1906–10-ին՝ Ժնևի համալսարանի ֆիզքիմիայի լաբորատորիայի վարիչ, 1924–32-ին՝ Անդրֆեդերացիայի պետպլանի արդ-յան

բաժանմունքի նախագահ, 1934–39-ին՝ ԵՊՀ անօրգ. քիմիայի ամբիոնի վարիչ, քիմ. ֆակ-ի դեկան, 1935–37-ին, միաժամանակ՝ ԵՊԻ, այնուհետև՝ ՀՊՄԻ անօրգ. քիմիայի ամբիոնների վարիչ:

ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆ Գեորգի Արտաշեսի (ծ. 1923), պետ., կուս. գործիչ, դիվանագետ: 1950–58-ին՝ ՀԼԿԵՄ ԿԿ 1-ին քարտուղար, 1961–66-ին՝ ՀԿԿ ԿԿ քարտուղար, 1966–73-ին՝ 2-րդ քարտուղար: 1973–81-ին՝ ԽՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան Սենեգալում և Գամբիայում, 1981–87-ին՝ Զիմբաբվեում: Ռուսաստանի հայերի միության փոխնախագահ (2004-ից):

ԽՍՀՄ Հոկտ. հեղ-յան, Կարմիր դրոշի, Աշխ. կարմիր դրոշի (2), ՀՄՊ 1-ին աստիճանի, «Պատվո նշան» շքանշաններ, ՀՀ «Մխիթար Գոշ» մեդալ (2011):

ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ Անուշավան Գրիգորի (1887–1961), կոմպոզիտոր, մանկավարժ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1953): Պրոֆ. (1934): Հեղինե ***Տեր-Ղևոնդյանի*** հայրը: 1914-ին գրառած (Ռոմանոս ***Մելիքյանի*** հետ) Շիրակի ժող. երգերի և պարերի հիման վրա ստեղծել է հայկ. առաջին սիմֆ. երկերից մեկը՝ «Շիրակի էտյուդները» (1916): Հեղինակ է նաև «Սեդա» (ըստ Լ. Շանթի, 1922), «Արեգակի ցոլքերում» (բեմ.՝ 1949) օպերաների, «Հրո հարսը» (ըստ Զ. Զարեանու, 1936), «Անահիտ» (ըստ Ղ. Աղայանի, բեմ.՝ 1940) բալետների, «Ախթամար» (1923) սիմֆ., «Վահագնի ծնունդը» (1923) վոկալ-սիմֆ. պոեմների, խմբերգների, երգերի, ռոմանսների, «Ռիխարդ Վագներ» գրքույկի (1933):

ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ Արամ Նահապետի (1928–1988), պատմաբան-աղբյուրագետ: Պատմ. գիտ. դ-ր (1973), պրոֆ. (1983): Վահան ***Տեր-Ղևոնդյանի*** հայրը: Աշխ-ները վերաբերում են հայ-արաբ. միջնադար. քաղ. և մշակութ. առնչություններին: Աշխարհաբարի է վերածել, ներածությամբ և ծանոթագրություններով հրատարակել Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» (1983), Ղևոնդի «Պատմությունը» (1982):

Սիրիայի գիտ-յան պատմության ինստ-ի պատվ. (1982), Հռոմի «Տիբերինա» ակադ-ի թղթ. (1986) անդամ:

ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ Հեղինե Անուշավանի (1918–1999), դաշնակահարուհի, մանկավարժ: Անուշավան ***Տեր-Ղևոնդյանի*** դուստրը: ՀՀ վաստ. արտիստ (1959): Նվագակցել է նշանավոր մենակատարների, մասնակցել հայ արվ-ի և գրկ-յան տաս-նօրյակին (Մոսկվա, 1956) և «Պրահայի գարուն» միջազգ. փառատոնին (1967):

ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ Նիկողայոս (1848–1920), մանկավարժ, մեթոդիստ: Կազմել է «Մայրենի լեզու» (I–IV դասարաններ) ընթերցարանների շարքը, «Այբբենարան» (1871, մինչև 1912-ը վերահրտ.՝ 35 անգամ):

ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ Վահան Արամի (ծ. 1961), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր: Արամ ***Տեր-Ղևոնդյանի*** որդին: Աշխ-ները վերաբերում են Մերձ. Արևելքի արաբ. երկրների հետ Կիլիկյան Հայաստանի հարաբերությունների հարցերին: 1995–1998-ին եղել է ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արգենտինայում, համատեղությամբ՝ նաև Ուրուգվայում և Բրազիլիայում: Մտնդ-ի տնօրենի պաշտոնակատար (2016-ից):

ՏԵՐ-ՂՈՒԿԱՍՈՎ (Տեր-Ղուկասյան) Արշակ Հարությունի (1819–1881), ռուս. բանակի գեն-լեյտ. (1876, գեն-մայոր՝ 1865-ից): Սողոմոն ***Տեր-Ղուկասովի*** կրտսեր եղբայրը: 1877–78-ի ռուս-թուրք. պատերազմի ժամանակ Տ-Ղ-ի հրամանատարությամբ Երևանյան զորաջոկատը 1877-ի ապրիլին մտել է Բայազետ, ազատագրել Դիադինը, Ղարաքիլիսան, մայիսին՝ Ալաշկերտը, Զեղկանը: Հունիսի 15-ին կազմակերպել է իր զորաջոկատի նահանջը, մոտ 20 հզ. հայ բնակիչների գաղթն Իգդիր, հունիսի 28-ին ազատագրել է պաշարված Բայազետը: 1878-ի հունվ-ին նշանակվել է Ախալցխայի ուղղությամբ գործող ռուս. զորքերի հրամ., պատերազմի ավարտից հետո գլխավորել է Անդրկասպ. զորքերը, այնուհետև՝ Կովկասյան 2-րդ կորպուսը:

ՏԵՐ-ՂՈՒԿԱՍՈՎ Սողոմոն Արտեմի (Տեր-Ղուկասյան Սողոմոն Հարությունի), XIX դ-ի բժիշկ, վիճաբան: Բժշկագիտ. դ-ր (1824): Արշակ ***Տեր-Ղուկասովի*** ավագ եղբայրը: 1825–37-ին՝ Թիֆլիսի ՝նինգ-ի գավառ. բժիշկ և մանկաբարձ, 1850-ին՝ Երևանի նահանգ. բժիշկ: Հեղինակ է «Վիճաբանական սիֆիլիսը» (ֆրանս., 1829), «Համառոտ տեղեկություններ խոլերայի մասին» (ռուս., 1830) գրքերի:

ՏԵՐ-ՄԱՆՎԵԼ ՔԱՐԳՈՒՐԾ, XV–XVI դդ-ի քանդակագարդող վարպետ: Աշխատել է հոր՝ ***Հովհաննես Եպիսկոպոս Նկարողի*** հետ: Նրանց գործերից հայտնի է Առինջ գ-ի (այժմ՝ ՀՀ Կոտայքի մարզում) մոտակայքում՝ ավերակ բերդի մուտքի կամարակալ քարին 1501-ին կերտված բարձրաքանդակը (մուտքի կողաքարին հեղինակների արձանագրությունն է և թվականը՝ ՋԾ):

ՏԵՐ-ՄԱՆՎԵԼՅԱՆ Լյուսի Մանվելի (ծ. 1928), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1980), պրոֆ. (1989): Աշխ-ները վերաբերում են միջնադար. հայ արվ-ի և ճարտյան հիմնահարցերին:

ՏԵՐ-ՄԱՐԳԱՐՅԱՆ Գասպար Հովհաննեսի (1856–1935), նավթարդյունաբերող, ազգ. բարերար: 1889-ին Բաքվում հիմնադրել է «Արամազդ» և «Բարեկամություն» (1901-ից՝ «Նավթ») փայատիր. ընկ-ները և եղել դրանց վարչությունների անփոփոխ նախագահը: XX դ-ի սկզբին հիմնադրել է Կովկասի լեռնարդ. և առևտր. ընկ-ը: Նյութապես օժանդակել է բարեգործ., մշակութ., որբախնամ կազմ-յունների, արվեստագետների, ուսանողների: 1922-ից՝ տարագիր:

ՏԵՐ-ՄԱՐԳԱՐՅԱՆ Հարություն Մկրտչի (1903–1990), մեխանիկոս: Տեխ. գիտ. դ-ր (1950), պրոֆ. (1953), գնդ.: 1957–71-ին՝ ԽՍՀՄ պետպլանի փոխնախագահ: Աշխ-ները վերաբերում են ավիացիոն շարժիչների և ինքնաթիռների արտադր-յան նոր տեխնոլոգ. շարժընթացների մշակման և ներդրման հարցերին: Ղեկավարել է ՄիԳ-21 գերձայն. ինքնաթիռի փորձարկման աշխ-ները: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1950):

ՏԵՐ-ՄԱՐԳԱՐՅԱՆ Մորիս (Արա, 1928–2002), ֆրանսահայ նկարիչ: Հեղինակ է դիմանկարների, բնանկարների, նատյուրմորտների, որոնք աչքի են ընկնում արտահայտչականությամբ և հուզականությամբ («Կապույտ օր», 1970-ական թթ., ևն): Ստեղծել է նաև 15 փորագրություն Ռ. Դերուգիյի «Ծաղրածուներ» գրքի համար (1974), նկարազարդել Բ. Կլավելի «Ռոնի ծովահենները» (1975) երկը:

ՏԵՐ-ՄԱՐԿՈՍՅԱՆ Աննա Սարգսի (ծ. 1951), ֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ-ր (1996), պրոֆ. (1997): Աշխ-ները վերաբերում են հարվահանագեղձերի թերֆունկցիայով պայմանավորված ցնցում. համախտանիշի բջջ. և նյարդ. բջջի վրա կալցիում-կարգավորիչ հումորալ համակարգի պարաթորմոնի ազդեցության մեխանիզմներին:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգ. բժշկակենսբ. բարձրագույն դպրոցի վարչության (2000-ից), Ուղեղի հետազոտության միջազգ. կազմ-յան (2005) անդամ:

ՀՀ «Մխիթար Հերացի» մեդալ (2005):

ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Զավեն Գրիգորի (ծ. 1936), գետնահողերի մեխանիկայի և հիմքաշինության բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1947), պրոֆ. (1979): ՌԴ գիտ. վաստ. գործիչ (1959): ՌԴ և Մոսկվայի պատվ. շինարար: Աշխ-ները վերաբերում են կիրառ. երկրամեխանիկայի տես. հիմունքներին, կավ. բազմաբաղադրիչ գետնահողերի զանգվածների լարվածա-ձևափոխված վիճակի գնահատման տես. և փորձարար. եղանակներին:

Մեծ Բրիտանիայի Ճարտարագետների թագավոր. ընկ-յան (1992), Նյու Յորքի (1996), ՌԴ Զր. հիմնախնդիրների ակադ-ի անդամ:

ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Կարեն Ավետիսի (1922–2005), ֆիզիկոս-տեսաբան: Ֆիզ-մաթ. գիտ. դ-ր (1957), պրոֆ. (1963): ՌԴԱ թղթ. անդամ (2000): 1967-ից՝ Մոսկվայի տես. և փորձարար. ֆիզիկայի ինստ-ի լարորատորիայի վարիչ: Աշակել է միջուկ. կուլոնյան գրգռման տեսություն: Հադրոնների ցրման շարժընթացներում կիրառել է Ռեգեի համալիր մոմենտների տեսությունը: Առաջարկել է գերբարձր էներգիաների տիրույթում պոմերոնների փոխազդեցության տեսություն:

ԽՍՀՄ Պետ. (1968) և ՌԴ Ս. Յ. Պոմերանչուկի անվ. (2001) մրց-ներ:

ՏԵՐ-ՄԱՐՈՒՔՅԱՆ Անդրեաս Մարուքի (1871–1919), քանդ.: Ստեղծել է հուշարձաններ (Ռ. Պատկանյանի, 1901), դիմաքանդակներ («Ն. Թաիրյան», 1903, «Խրիմյան Հայրիկ», 1907, երկուսն էլ՝ ՀԱՊ), ազգ-հայրենասիր. թեմայով բարձրաքանդակներ («Հայաստան», 1914, «1512 – հայ տպագրություն – 1912», 1912), Խ. Աբովյանի արձանը (1913, 1925-ին Փարիզից տեղափոխվել է Երևան, այժմ՝ Խ. Աբովյանի տուն-թանգարանի առջև): Տ-Մ. սկզբնավորել է XX դ-ի սկզբի հայկ. հուշարձան. քանդ-յունը:

ՏԵՐՄԵՆ Լև Սերգեևիչ (1896–1993), ռուս. ճարտարագետ-էլեկտրատեխնիկ, երաժիշտ: Ստեղծել է տերմենվոկս կոչված էլեկտրաերաժշտ. գործիքը (1920): 1931–1938-ին՝ էլեկտրաերաժշտ. գործիքների արտադր-յան բաժնետիր. ընկ-յան տնօրենն (ԱՄՆ): 1966-ից՝ ՄՊՀ ֆիզֆակ-ի ձայնագիտ-յան ամբիոնի գիտ. աշխատակից:

ՏԵՐ-ՄԵՐԳԵՐՅԱՆ (Տեր-Մերկերյան) Ժան Երվանդի (1935–2015), ջութակահար: ՀՀ ժող. արտիստ (1971): Ռոբեր ***Տեր-Մերգերյանի*** եղբայրը: 1981-ից՝ Սարսելում: Հանդես է եկել մենահամերգներով:

Յ. Սլավիկի և Ֆ. Օնդրժիչեկի (Պրահա, 1956, 2-րդ մրց.), Պ. Ի. Չայկովսկու (Մոսկվա, 1958, 1-ին կարգի դիպլոմ), Մ. Լոնգի և Ժ. Տիբոյի (Փարիզ, 1961, 1-ին մրց.), Եղիսաբեթ թագուհու անվ. (Բրյուսել, 1963, 9-րդ մրց.) միջազգ. մրցույթների դափնեկիր, ՀԽՍՀ Պետ. մրց. (1977):

ՏԵՐ-ՄԵՐԳԵՐՅԱՆ (Տեր-Մերկերյան) Ռոբեր (ծ. 1938), բանասեր, լեզվաբան, թարգմանիչ: Բանասիր. գիտ. դ-ր (1981), պրոֆ. (2001), ԵՊՀ պատվ. դ-ր (2004): Ժան ***Տեր-Մերգերյանի*** եղբայրը: Հե-

դինակ է «Հայոց լեզուն Սովետական Հայաստանում, բառապաշարի զարգացումը» (ֆրանս., 1984), «Եզրաբանական ուղեցույց» (հ. 1–4, 1993–2002), «Արմենիաքա, հայոց պատմության և մշակույթի ուսումնասիրություններ» (2004) երկերի, կատարել է թարգմ-յուններ:

ՏԵՐՄԻՆ (լատ.՝ terminus – սահման, եզր), **եզրույթ**, 1. բառ կամ բառակապակցություն, որն արտահայտում է գիտ-յան, տեխնիկայի, մշակույթի, հաս. կյանքի որևէ բնագավառի մեկ հասկացություն: Բոլոր լեզուներում գիտատեխ. առաջադիմությանը համընթաց ստեղծվում են նոր Տ-ներ: 2. Սիլոգիստիկայում և ավանդ. տրամաբ-յան մեջ Տ. ***սիլոգիզմի*** եզրակացության և նախադրյալների սուբյեկտն ու ստորոգելին (պրեդիկատ) է: Եզրակացության սուբյեկտը կոչվում է փոքր Տ., պրեդիկատը՝ մեծ Տ., իսկ նախադրյալների ընդհ. Տ.՝ միջին Տ.:

ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, եզրութաբանություն, 1. գիտ-յան, տեխնիկայի, մշակույթի ու հաս կյանքի որևէ բնագավառի վերաբերող գիտ. ***տերմինների*** (եզրույթ) ամբողջություն: 2. Որևէ առանձին բնագավառի տերմինների համակարգ: 3. Բառագիտ-յան բաժին. զբաղվում է լեզվի տերմինների համակարգի ուսումնասիրությամբ: Յուրաքանչյուր մասնագիտ-յանը հատուկ հասկացություններն արտահայտվում են համապատասխան տերմիններով, որոնք տվյալ մասնագիտ-յան հասկացությունների համակարգի և տվյալ լեզվի բառ. կազմի բաղկացուցիչ մասն են:

ՏԵՐՄԻՆԱԼ, 1. հաշվող. համակարգի ծայրասարք, համակարգ՝ տեղեկույթի ներմուծման և արտամուծման համար. համակարգչի հետ կապված է հաղորդիչ կապուղիներով: Որպես Տ.՝ օգտագործում են, օր., ցուցասարքերը, հեռատիպերը: 2. Նվինգստ-ի տեղամաս. նախատեսված է բեռնարկղների և փաթեթ. բեռների մշակման, նաև հեղուկանավերի բեռնման համար (նավթ. Տ.): 3. Օդանավակայանի և ավտոկայանի շինություն, որը ծառայում է բեռնա- և ուղևորահոսքերը բաժանելու համար:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ Անահիտ (ծ. 1933), պատմաբան: Սորբոնի (Փարիզ) համալսարանի և Սոցիալ. գիտ-յունների բարձրագույն դպրոցի դասախոս: Ուսումնասիրությունները վերաբերում են Հայաստանի նոր շրջանի, Հայկ. հարցի, Այսրկովկասում ազգ. հարաբերությունների պատմությանը:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ Գեղեոն Իսրայելի (1865–1938), քաղ. և ռազմ. գործիչ: 1918-ին իր զորամասով Զանգեզուրում համագործակցել է ***Անդրանիկի*** հետ: Գարեգին ***Նժդեհի*** հետ մասնակցել է երկրամասի պաշտպ-յան կազմակերպմանը: Լեռնահայաստանի անկումից հետո, 1921-ի ամռանը, տարագրվել է Իրան: 1937-ին վերադարձել է Հայաստան: Անհիմն բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ Երվանդ Գալուստի (1879–1974), բանասեր-պատմաբան, բառարանագիր: Փիլ. (1904) և բանասիր. (1943) գիտ-ների դ-ր, պրոֆ. (1945): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ: Լիլիա և Մարգարիտ ***Տեր-Մինասյանների*** հայրը: Եղել է Էջմիածնի տպարանի տնօրենը: 1921-ին՝ Կուլտուրպատմ. ինստ-ի գիտքարտուղար, ***«Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի»*** տարեգրքի խմբ., 1943–49-ին՝ ԵՊՀ օտար լեզուների ամբիոնի վարիչ: Հեղինակ է «Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ» (1908), «Ոսկեդարի հայ գրականությունը» (1946), «Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից» (1968), «Պատմաբանասիրական հետազոտություններ» (1971), «Հայոց եկեղեցին» և այլ աշխ-ների, «Հուշեր իմ կյանքից» (հրտ. 2005) գրքի: Կազմել է «Ռուս-հայերեն նոր բառարանը» (հ. 1, 2, 1933, 1935), «Հայ-ռուսերեն բառարանը» (1947, երկուսն էլ՝ համահեղ.), «Օտարազգի դարձվածքների գրպանի բառգրքույկը» (1935): Կարապետ ***Տեր-Մկրտչյանի*** հետ հրատարակել է Իրենիոս Լուգդոնացու «Յոյցք առաքելական քարոզութեանն» (1907, հայ. և գերմ. զուգադիր տեքստերով), Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն» (1908, 2 երկերի հուն. բնագրերն էլ կորել են) աղբյուրագիտ-բնագրագիտ. երկերը:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ Լիլիա (Լիլի) Երվանդի (1921–1998), թարգմանչուհի, գրականագետ: ՀԽՍՀ վաստ. ուսուցիչ (1967): Երվանդ ***Տեր-Մինասյանի*** դուստրը, Մարգարիտ ***Տեր-Մինասյանի*** քույրը: Ռուս. է թարգմանել Ա. Սահինյանի, Ժ. Ավետիսյանի, Վ. Արամյանի, ռուս-ից հայ.՝ Ֆ. Մ. Դոստոևսկու, Կ. Մ. Նագիբինի, Բ. Լ. Վասիլևի, գերմ-ից հայ.՝ Յ. Վ. Գյոթեի, Ֆ. Վերֆելի, Լ. Ռենների, Է. Հիլզենռաթի ստեղծագործություններից:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ Խաչատուր Դավթի (1870–1906), նկարիչ: Հեղինակ է «Վերադարձ որսից» («Քարե դար», 1901, ՀՊԹ), «Նախիր» (1904), «Նատյուրմորտ արձանիկով» (երկուսն էլ՝ ՀԱՊ) և այլ գործերի:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ Մարգարիտ Երվանդի (1910–1995), կենդանաբան-միջատաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1944), պրոֆ. (1949): Երվանդ ***Տեր-Մինասյանի*** դուստրը, Լիլիա ***Տեր-Մինասյանի*** քույրը: Աշխ-ները վերաբերում են վնասատու բզեզների (երկարակնճիթ ընդակեր) ԽՍՀՄ և ՀՀ ֆաունայի ուսումնասիրությանը:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ Ռուբեն (Մինաս) Կարապետի, **Ռուբեն** (1882–1951), ազգ-ազատագր. շարժման, հաս., պետ. գործիչ: ՀՀԴ կուս-յան անդամ՝ 1902-ից: 1906–08-ին Տարոնում եղել է ***Գևորգ Չավուշի*** խմբում, մասնակցել Սուլուխի կռվին (1907-ի մայիսի 27): 1915-ի ***Սասունի ինքնապաշտպանության*** ղեկ-ներից: 1917–18-ին եղել է ՀԱԽ-ի անդամ, ապա ընտրվել ՀՀ (1918–20) խորհրդարանի անդամ: Զորական և ՆԳ նախարար (1920-ի մայիս–նոյեմբ.): Խորհրդ. իշխանություն հաստատվելուց հետո անցել է Զանգեզուր, 1921-ին՝ Պարսկաստան, այնտեղից՝ Ֆրանսիա (մինչև 1933-ը): 1933–42-ին ապրել է Կահիրեում, ապա՝ Պաղեստինում, Բեյրութում, Ֆրանսիայում: Աշխ-ներից իր վավերականությամբ հատկապես արժեքավոր է «Հայ յեղափոխականի մը յիշատակները» (հ. 1–7, 1904–52, վերահրտ.՝ հ. 1–7, Ե., 1990) երկը:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՈՎ Յուրի Ստեփանի (1910–1978), մետաղաֆիզիկայի բնագավառի գիտնական: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1945), պրոֆ. (1947): Ղողզ. ԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1960): Աշխ-ները վերաբերում են մետաղաֆիզիկայի խնդիրներին:

ՏԵՐՄԻՆԱՏՈՐ (լատ.՝ termino – սահմանազատել), մոլորակների կամ նրանց արբանյակների մակերևույթների լուսավորված և չլուսավորված մասերի միջև եղած սահմանագիծը:

ՏԵՐՄԻՆՈՒՍ (լատ.՝ terminus – սահման), հողաբաժան սահմանանշանների (սրբագործված քարեր, սյուներ) աստվածություն հռոմ. դից-յան մեջ: Տ-ին նվիրված տոնին (փետր. 23-ին) հարևանները համատեղ զոհեր են մատուցել (հաց, մեղր, գինի, երբեմն՝ գառ) սահմանանշանների մոտ, կազմակերպել խրախճանքներ:

ՏԵՐՄԻՏՆԵՐ, նույնաթևներ (Icoptera), հաս. միջատների կարգ: Հաս. միջատների ամենապարզունակ խումբն է՝ կազմված մի քանի հարյուրից մինչև մի քանի միլիոն միջատներից: Բաժանված է հետևյալ՝ բազմացման ընդունակ էգ («թագուհի», երկ.՝ մինչև 140 *մմ*), արու («թագավոր», չափերը համեմատաբար փոքր են), անթև, թրթուրանման աշխատավորներ (թերզարգացած սեռ. օրգաններով էգեր ու արուներ, երկ.՝ 2–15 *մմ*) և զինվորներ (մասնագիտացած աշխատավորներ, երկ.՝ մինչև 20 *մմ*) կաստաների: Բազմակեր են. քայքայում են բնափայտը, փչացնում թուղթը, կաշին, գղտ. մթերքը ևն: Մի շարք տեսակներ վնասում են ծառերը, խաղողի վազերը:

ՏԵՐ-ՄԻՐԱՔՅԱՆ Հովհաննես Հարությունի (1856–1938), մանկավարժ-մեթոդիստ: ՀԽՍՀ աշխ. հերոս (1935): Զմյուռնիայի հայկ., 1895-ին՝ Ալեքսանդրապոլի, 1905-ից՝ Թիֆլիսի Ներսիսյան, 1914–21-ին՝ Հովնանյան դպրոցների տեսուչ, 1911–14-ին՝ թեմ. տեսուչ: Հեղինակ է «Ժողովրդի ընթերցանութիւնը» (1896), «Դեռահասների ազատ ընթերցանութիւնը» (1898), «Մեթոդական գործնական ցուցմունքներ» (1912) ձեռնարկների: Կատարել է նաև թարգմ-յուններ:

ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Լևոն (Լեոն) Անդրեյի (1867–1943), ճարտարագետ-շինարար: Անդրեյ ***Միքայելյանի*** և Միքայել ***Տեր-Միքայելյանի*** հայրը: 1918–20-ին՝ ՀՀ երկթղ. ճանապարհների պետ: Աշխ-ները վերաբերում են թվերի տեսությանը, երկթղ-ու և մաթ-ի (XVIII դ.) պատմությանը:

ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Միքայել Լևոնի (1923–2004), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1962), պրոֆ. (1963): ՀՀ ԳԱԱ ակադ. (1982, թղթ. անդամ՝ 1962-ից): Լևոն ***Տեր-Միքայելյանի*** որդին, Անդրեյ ***Միքայելյանի*** եղբայրը: 1967–94-ին՝ ՀՀ ԳԱԱ ֆիզ. հետազոտությունների ինստ-ի (2013-ից՝ Տ-Մ-ի անվ.) տնօրեն, 1996–2004-ին՝ պատվ. տնօրեն: Ուսումնասիրել է նյութ. միջավայրի ազդեցությունն էլեկտրամագնիս. փոխազդեցության վրա՝ բարձր էներգիաների դեպքում: Նրա առաջադրած կոշտ մեներանգ. ճառագայթների ստացման մեթոդը կիրառվում է աշխարհի բոլոր արագացուցիչներում: Մշակել է անհամասեռ միջավայրում հավասարաչափ շարժվող մասնիկների ճառագայթման տեսություն: Որոշ աշխ-ներ վերաբերում են պարզագույն ատոմ. համակարգերի և ատոմ. անցումների հաճախությանը մոտ հաճախությամբ կոհերենտ լազեր. ճառագայթման փոխազդեցության հարցերին, քվանտ. էլեկտրոնիկայում կիրառվող բյուրեղների հետազոտմանը: Առաջարկել է օպտիկ. գեներատորների նոր տարբերակներ, մշակել ատոմների գրգռման և հաճախականությունների տարածման տարբեր եղանակներ: 1991-ին առաջադրվել է նոբելյան մրց-ի: ԽՍՀՄ «Ժողովուրդների բարեկամության» շքանշան:

ՏԵՐ-ՄԻՔԵԼՅԱՆ (Տեր-Միքելով) Գաբրիել Միքայելի (1874–1941), ճարտ.: ՎԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1937): ԽՍՀՄ ճարտ. ակադ-ի թղթ. անդամ (1937): Նրա նախագծերով Բաքվում կառուցվել են առանձնատներ (1900–12), Առևտր. ուսումնարանը (1904), Ֆիզիոթերապևտիկ ինստ-ի համալիրը (1928–35, Փարիզի համաշխ. ցուցահանդեսի Մեծ մրց. և ոսկե մեդալ՝ 1937), Յալթայում՝ Սբ Հռիփսիմե հայկ. եկեղեցին (1905–09), Թիֆլիսում՝ Մ. Արամյանցի «Մաժեստիկ» (հետագայում՝ «Թրիլիսի» հյուրանոց) հյուրանոցը (1912–14), Հ. Մելիք-Դադայանի եկամտաբեր տունը (1912–14, հետագայում՝ Երկթեղ. տեխնիկում), Պատանի հանդիսատեսի թատրոնը (1938–49, այժմ՝ Երկաթուղայինների տուն) և այլ կառույցներ:

ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ Ալֆրեդ Հայրապետի (ծ. 1971), ըմբիշ: ԽՍՀՄ ս. վ. (1989): Եվրոպայի (1991, 1994, 1995, 2003), աշխարհի (1993, 1995, 1997, 1999), օլիմպ. խաղերի 2-րդ (1992) մրցանակակիր, Եվրոպայի (1992), աշխարհի (1994) չեմպիոն:

ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ Աշոտ Մովսեսի (1891–1959), մաթեմատիկոս, ճարտարագետ-մեխանիկոս: Պրոֆ. (1930): ՀԽՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1940): 1930–59-ին՝ ԵՊՀ տես. մեխանիկայի ամբիոնի վարիչ: Նրա մասնակցությամբ հիմնադրվել են ԵՊՀ նյութերի դիմադրության և ՀԳԻ կիրառ. մեխանիկայի ամբիոնները: Ղեկավարել է Զորաբերդի և Քանաքեռի ջրէկների կառուցման և շահագործման աշխ-ները:

ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ (Տեր-Սարգսյան) Գալուստ Մկրտչի, **Միաբան** (1860–1918), հայագետ, պատմաբան, բնագրագետ-աղբյուրագետ, թարգմանիչ, խմբ.: Մոսկվայի կայսեր. հնագիտ. ընկ-յան անդամ (1900-ից, թղթ. անդամ՝ 1894-ից): *Հովհաննես Կարնեցու* թողը: 1892–94 և 1902-ին՝ Մայր աթոռի *«Արարատ»* ամսագրի («Միաբան» ստորագրությամբ տպագրել է բազմաթիվ հայագիտ. ուսումնասիրություններ), 1913-ին՝ «Շողակաթ» գիտ. ժող-ի խմբ.: Հեղինակ է «Ուրարտեան բևեռագրերի լեզուն» (1893), «Խորենացու Պատմութեան ուսումնասիրութիւն» (1896), «Ղազար Փարպեցու ձեռագրերը» (1902), «Փավստոսի ձեռագրերը» (գերմ., 1904), «Տիմոթէոս Կուզի «Հակաճառութեան» հայ թարգմանութեան ժամանակը...» (1908), «Հայ մատենագրութեան հնագոյն թուականները» (1913), «Մաոր և հայագիտության հարցերը» (հրտ.՝ 1968) աշխ-ների, «Հայկականք» (Ա–ԺԲ, 1894, ԺԳ–ԺԹ, 1899) հոդվածաշարի, «Հայագիտական ուսումնասիրություններ» հ. 1, 2, հրտ.՝ 1979, 1998, առաջաբ. և ծնթգր.՝ Պ. Հակոբյանի) ժող-ի: Կազմել և հրատարակել է Ղազար Փարպեցու (1904, Ս. Մալխասյանցի հետ), Եզնիկի (1904, Հ. Աճառյանի հետ), Ագաթանգեղոսի (1909, Ս. Կանայանի հետ) երկերի քննահամեմատ. բնագրերը: Պատառիկների համադրման միջոցով վերականգնել է V դ-ում Աբրահամ Խոստովանողի թարգմանած «Վկայք Արևելից» ժող-ը (1921): Թարգմանել է Է. Ռեկլյուի աշխարհագրության՝ Հայաստանին ու հայերին վերաբերող հատվածները և այլ գործեր:

ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ Դրաստամատ Հակոբի (1877–1964), մանկավարժ, բժիշկ, հոգեբան: Բժշկությամբ զբաղվել է Թիֆլիսում, Վաղարշապատում, 1916–18-ին՝ Կովկասյան ռազմաճակատում, ապա՝ Կարմիր խաչի Թիֆլիսի հայկ. հիվանդանոցում և այլուր: 1925-ին տեղափոխվել է Երևան, եղել է մանկավարժ. տեխնիկումի տնօրեն: Հեղինակ է մարդու անատոմիային, ֆիզիոլոգիային, դպրոց. առողջապ-յանը և սանհիգիենային վերաբերող աշխ-ների:

ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ Լևոն Մկրտչի (1908–1988), առաձգականության տեսության և շին. մեխանիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1947), պրոֆ. (1980): Աշխ-ները վերաբերում են առաձգականության տեսության ընդհ. խնդիրներին, էլեկտրահաղորդման օդ. գծերի թրթռամարիչների ստեղծման հարցերին:

ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ Կարապետ (1866–1915), պատմաբան, բանասեր, եպս.: Լայպցիգի համալսարանի փիլ-յան լիցենցիատ (1894): 1899-ին՝ Գևորգյան ճեմարանի տեսուչ: 1907-ին՝ Ատրպատականի, 1914-ից՝ Շամախու հայոց թեմի առաջնորդ: Հայթայթել և էջմիածնի մտնդ-ին է ուղարկել հայկ. հին ձեռագրեր: Երվանդ Տեր-Մինասյանի հետ հայտնաբերել և գերմ. է թարգմանել Ս. Իրենիոսի (Երանոս) «Ցոյցք առաքելական քարոզութեանն» (1907, գերմ. և հայ. զուգադիր տեքստերով): Զբաղվել է Հայաստանում աղանդավոր. շարժումների պատմության հարցերով:

ՏԵՐՅԱՆ (Թերզիբաշյան) Աբրահամ Հակոբի (ծ. 1942), բանասեր, հայագետ: Աստվածաբան. գիտ. դ-ր (1970), պրոֆ. (1984): Աշխ-ները վերաբերում են Փիլոն Ալեքսանդրացու ժառանգությանը («Յաղագս բան ունել եւ անասուն կենդանացդ», անգլ., 1981, ֆրանս., 1988, «Այնոցիկ որ յելոն է խնդրոց եւ լուծմանց»), հունաբան դպրոցին, հայ միջնադար. աստվածաբանությանը: Հեղինակ է «Հայրենասիրությունը և բարեպաշտությունը հայ քրիստոնեության մեջ» (անգլ., 2000) աշխ-յան: ԱՄՆ «Ֆուլբրայթ» հաստատության մրց. (2005):

ՏԵՐՅԱՆ Ալենուշ (1920–1989), ֆրանսահայ ֆիզիկոս-աստղագետ: Փիլ-յան դ-ր (1957), պրոֆ. (1963): 1947–54 և 1957–79-ին՝ Թեհրանի (ֆիզիկայի՝ Իրանի 1-ին կին պրոֆ-ը), 1954–57-ին՝ Սորբոնի համալսարանների աշխատակից: Իրանի 1-ին աստղադիտարանի հիմնադիրը («Իրանի ժամանակակից աստղագիտության մայրը»):

ՏԵՐՅԱՆ Արտյոմ Սարգսի (1930–1970), հունա-հռոմ. և ազատ ոճի ըմբիշ: ԽՍՀՄ ս. վ. (1953): ԽՍՀՄ 6-ակի (1950–55), աշխարհի (1953) չեմպիոն, օլիմպ. խաղերի բրոնզե մեդալակիր (1952):

ՏԵՐՅԱՆ Միքայել Նիկիտայի (1905–1987), ալտահար, դիրիժոր, մանկավարժ: ՀԽՍՀ ժող. արտիստ (1945): *Կոմիտասի անվան քառյակի* հիմնադիրներից և ալտահար (1924–47-ին՝ ընդմիջումով): 1948–53-ին՝ Մոսկվայի մարզ. ֆիլհարմոնիայի սիմֆ., 1965–66-ին՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբերի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր:

ԽՍՀՄ Պետ. (1946), Հ. Ֆոն Կարայանի անվ. միջազգ. մրցույթի 1-ին (1970) մրց-ներ:

ՏԵՐՅԱՆ Նվարդ Վահանի (1920–1978), թարգմանչուհի: Վահան *Տերյանի* դուստրը: Կազմել և հրատարակել է Վ. Տերյանի 67 նամակները («Չհրատարակված նամակներ», 1970, ռուս.), «Քննադատություն և հրապարակախոսություն: Հոդվածներ» (1985), «Վահան Տերյանի նամակները Անթառամ Միսկարյանին» (1972) ժող-ները: Տողացի ռուս. է թարգմանել Վ. Տերյանի չթարգմանված բանաստեղծություններից, որոնք ընդգրկվել են «Բանաստեղծություններ» (ռուս., 1980, Լենինգրադ) ժող-ում:

ՏԵՐՅԱՆ (Տեր-Գրիգորյան) Վահան Սուքիասի (1885–1920), բանաստեղծ, գր., հաս. գործիչ: *Զավախեցու* եղբայրը, Նվարդ *Տերյանի* հայրը: 1908-ին լույս տեսած իր «Մթնշաղի անուրջներ» ժող-ով նոր դարաշրջուխ է բացել հայ քնարերգության պատմության մեջ: 1910-ին կազմակերպել, մինչև 1919-ը ղեկավարել է Մոսկվայի գր. խմբակը (Պ. Մակինցյանի, Կ. Միքայելյանի, Յ. Խանզադյանի, Ա. Մյասնիկյանի հետ) և լույս ընծայել *«Գարուն»* գր-գեղ. ալմանախի 3 հատոր: 1912-ին հիմնադրել է «Պանթեոն» հրտչ. ընկ-ը, որտեղ նույն թվականին լույս է տեսել Տ-ի «Բանաստեղծությունների» I հատորը: 1914-ին հանդես է եկել «Հայ գրականության գալիք օրը» ծրագրային զեկուցումով, 1915–16-ին մասնակցել է Վ. Յ. *Բրյուսովի* կազմած «Հայ պոեզիան...» (ռուս.) անթոլոգիայի և Մ. *Գորկու* խմբագրած «Հայ գրականության ժողովածուի» աշխ-ներին: Ռուս. է թարգմանել Գ. Սունդուկյանի, Րաֆֆու, Շիրվանզադեի, հայ.՝ Շոթա Ռուսթավելու, Վ. Յ. Բրյուսովի, Հ. Հայնեի, Պ. Վեռլենի, Է. Վերհառնի, Ֆ. Սոլոգուբի, Ա. Ծերետելու, Շ. Բոդլերի ստեղծագործություններից: 1967-ից ամեն տարի հուլիսի նախավերջին կիրակի Տ-ի ծննդավայր Գանձայում նշվում է Տերյանական պոեզիայի օրը:

ՏԵՐՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ, ստեղծվել է 1957-ին Վահան *Տերյանի* հայրական տանը (գ. Գանձա, Վրաստանի Նինոծմինդայի շրջան): 1973-ին կից կառուցվել է ցուցասրահ, որտեղ ներկայացված են փաստաթղթեր, ձեռագրեր, լուսանկարներ, Տերյանի երկերի հրտ-յուններ, տերյանագիտ. ուսումնասիրություններ ևն: Բակում կանգնեցված է բանաստեղծի կիսանդրին:

ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆ Ներսես (Արտաշես-Ստեփան) Բաբկենի (1920–2006), հայագետ, հրապարակախոս, խմբ.: ՎնտՄՄ անդամ (1940), արք. (1992): 1948–52-ին՝ *«Մխիթարեան ընտանիք»*-ի, 1957–79-ին՝ *«Բազմավէպ»*-ի (ընդհատումներով) խմբագրապետ, 1976–86-ին՝ ձեռագրատան տնօրեն: 1991–2005-ին՝ Արլ. Եվրոպայի հայ կաթոլիկ համայնքների առաջնորդ: Հրատարակել է Առաքել Սյունեցու «Դրախտագիրքը» (1956, բառարանը՝ Տ-Ն-ի), Մխիթար Սեբաստացու «Մտածութիւնք ի վերայ բանից Փրկչին» (1969) երկը:

ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆ Սիրարփի Միհրանի (1896–1989), արվեստաբան, բյուզանդագետ, հայագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1936), պրոֆ. (1946): ՀԽՍՀ ԳԱ արտ. անդամ (1966): Հեղինակ է «Բարեղամի և Հովասափի վեպի նկարազարդումները» (ֆրանս., 1937, ակադ-ի մրց.), «Վենետիկի Մխիթարյան հայրերի մատենադարանի XII, XIII և XIV դարերի հայկական պատկերազարդ ձեռագրերը» (ֆրանս., 1937), «Հայաստանը և Բյուզանդական կայսրությունը» (1945), «Աղթամար. Ս. Խաչ եկեղեցի» (1965), «Հայ արվեստը միջնադարում» (1975), «Հայաստանի արվեստը» (ֆրանս., 1977) և այլ աշխ-ների, հանրամատչելի գործերից է «Հայերը» (անգլ., 1969, «Հին երկրներ և ժողովուրդներ», մատենաշար) ևն:

Անգլիայի հնագետների միության ոսկե շքանշան (1960), Ֆրանսիայի Արձանա-

գրությունների ու գեղ. գրկ–յան ակադ–ի Շլյումբեր Ժեի (1963), ՀԽՍՀ ԳԱ Անանիա Շիրակացու (1981) անվ. մրց–ներ:

ՏԵՐՈՅԱՆ (Դերոյան) Վարազդատ Մկրտչի (1888–1938), փիլ., հաս., քաղ. գործիչ, թարգմանիչ, մանկավարժ: Դաս. ավանդել է Վանի, Բաքվի, Թիֆլիսի հայկ. դպրոցներում, եղել տնօրեն: 1915–ին մասնակցել է Վանի ինքնապաշտպ–յանը: 1930–31–ին նախաձեռնել է ՀԽՍՀ գրապալատի գրադարանի գրացուցակի կազմումը: Թարգմանել է Ռ. Դեկարտի, Ի. Կանտի, Գ. Հեգելի, Բ. Սպինոզայի, Ա. Բերգսոնի, Ա. Ֆրանսի և ուր. գործերից: Հեղինակ է «Գիտական և հրապարակախոսական աշխատություններ» (հրտ.՝ 2006), «Իմպերիալիստական ծիծեռնակներ...» (հրտ.՝ 2008) ժող–ների: Անհատի պաշտամունքի զոհ:

ՏԵՐՊԵՆՆԵՐ, բնական ածխաջրածիններ՝ (C_5H_8)n ընդհ. բանաձևով: Տարբերում են մոնոտերպեններ (n=2), մեկուկես կամ սեսքվիտերպեններ (n=3), երկտերպեններ (n=4) ևն: Տ–ով և նրանց ածանցյալներով (տերպենոիդներով) հատկապես հարուստ են եթերայուղերը: Տ. են քափուրը, ցիտրալը, մենթոլը, գերանիոլը, տերպինեոլը: Մի շարք Տ. և տերպենոիդներ կիրառվում են օծանելիքի, դեղանյութերի, քսայուղերի, հանքահարստացման ռեագենտների, միջատասպանների արտադր–յան մեջ:

ՏԵՐ–ՊԵՏՐՈՍՅԱՆ Լևոն Հակոբի (ծ. 1945), քաղ–պետ. գործիչ: ՀՀ 1–ին նախագահը՝ 1991–98–ին (վերընտրվել է 1996–ին): Բանասիր. գիտ. դ–ր (1987): 1988–ի մայիսից՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամ, ՀՀՇ կուս–յան վարչության անդամ, 1989–ի նոյեմբ–ից՝ նախագահ, ՀՀ ԳԽ նախագահ (1990–ի օգոստ–1991–ի հոկտ.): 1998–ի փետր. 3–ին քաղ. դրդապատճառներով հրաժարական է տվել: 2008–ի նախագահ. ընտրություններում առաջադրվել է որպես նախագահի թեկնածու (ստացել է ձայների 21,5 %–ը): Տ–Պ–ի նախագահության օրոք ընդունվել է ՀՀ Սահմանադրությունը (1995), փաստացի ազատագրվել ԼՂ–ն: Աշխ–ները վերաբերում են հայ միջնադար. թարգմ. գրկ–յանը և հայ–ասոր. գր. առնչություններին: Վենետիկի մխիթարյան ակադ–ի (1991) և մի շարք համալսարանների պատվ. դ–ր:

ՏԵՐ–ՊԵՏՐՈՍՅԱՆ (Խուտուլաշվիլի) Զավահիր Արշակի (1888–1961), հեղ. գործիչ: Աշխ. հերոս (1929): ***Կամոյի*** քույրը և զինակիցը: 1920–ից՝ Ադրբ. ԽՍՀ ԱԳ ժողկոմի անձն. քարտուղարը, 1921–ից՝ ՎԽՍՀ առժողկոմի տեղակալ, 1927–ից՝ ՎԽՍՀ ապահովագրության նախագահ, առժողկոմ, 1934–36–ին՝ առժողկոմատի վարչության պետ:

ՏԵՐ–ՊՈՂՈՍՅԱՆ Ավետիք Գրիգորի (1880–1954), կենդանաբան: Կենսբ. գիտ. դ–ր (1909), պրոֆ. (1929): ՀՀ գիտ. վաստ. գործիչ: Աշխ–ները վերաբերում են ՀՀ–ում տարածված ջր. կենդանիների, հատկապես՝ ստորին խեցեմորթների, գղտ. բույսերի վնասատու կլոր որդերի ուսումնասիրմանը, հայկ. կենսբ. մտքի զարգացման պատմությանը: Տ–Պ–ի անունով է կոչվել (1980–ից) ԵՊՀ կենդր–յան ամբիոնը:

ՏԵՐ–ՊՈՂՈՍՅԱՆ Մայքլ (1925–1996), ֆիզիկոս, գյուտարար: Պոզիտրոն. ճառագայթման շերտագրության հիմնադիրներից: 1946–ից՝ ԱՄՆ–ում: Ստեղծել է (1977) համակարգչ. շերտագրության միջոցով մարդու մարմնի պատկերը վերարտադրող սարք, որն օգտագործվում է քաղցկեղ. գոյացության հայտնաբերման համար, նաև կիրառվում սրտային հիվանդությունների վերահսկման նպատակով:

ՏԵՐ–ՊՈՂՈՍՅԱՆ Սամսոն Պողոսի, ***Խենթ*** (1846–1911), 1877–78–ի ***ռուս–թուրքական պատերազմի*** հերոս: 1877–ի հունիսին, երբ թուրք. զորքերը շրջապատել են Բայազետի բերդը, Տ–Պ. քրդ. տարազով ծպտված, խենթ ձևանալով, գիշերով դուրս է եկել թշնամու օղակից և ռուս. հրամանատարությանը տեղեկացրել բերդի վիճակի մասին: Տ–Պ–ին շնորհվել է Գեորգիևյան ոսկե խաչ և սահմանվել ցմահ թոշակ: Բաֆֆու «Խենթը» վեպի գլխ. հերոսի՝ Վարդանի նախատիպն է:

ՏԵՐ–ՊՈՂՈՍՈՎ Վլադիմիր Վահանի (1914–1953), ճարտարագետ, մետաղագետ: 1947–52–ին՝ Նորիլսկի մետաղաձուլ. գործարանի գլխ. ճարտարագետ: Մշակել և արտադր–յան մեջ ներդրել է մետաղների (նիկել, պղինձ ևն) ստացման նոր եղանակներ:

ՏԵՐՊՈՒԳՆԵՐ (Hexagrammidae), գրահավոր ձկներ, աքերինանմանների կարգի ծով. ձկների ընտանիք: Երկ.՝ մինչև 1 *մ*, կ. զ.՝ մինչև 18 *կգ*: Որոշ տեսակներ վառ գունավորված են: Հայտնի է 1 տեսակ՝ Խաղաղ օվկ–ի հս. մասում, Շապոն., Օխոտի և Բերինգի ծովերում: Արդյունագործ. ձուկ է:

ՏԵՐ–ՍԱՀԱԿՅԱՆ Կարապետ (1882–1915), պատմաբան, բյուզանդագետ, բանասեր, բանաստեղծ: ՎնտՄՄ անդամ: 1906–13–ին՝ «Բազմավէպի» խմբ., 1914–15–ին՝ Տրապիզոնի Մխիթարյան վարժարանի տեսուչ: Տ–Ս–ի պատմագիտ. գործերից առավել արժեքավոր է «Հայ կայսերք Բիւզանդիոնի» (հ. 1–2, 1905) մենագրությունը, որտեղ ուրվագծել է հայ բյուզանդագիտ–յան ծրագիրը: Մեծ եղեռնի զոհ:

ՏԵՐ–ՍԱՀԱԿՅԱՆ (Տեր–Սահակով) Ռուբեն Տիգրանի (1906–1980), կապի զորքերի գեն–մայոր (1958): ՀՄՊ–ի տարիներին մասնակցել է Անդրկովկասի ՀՕՊ–ի կազմակերպմանը: Հետպատերազմյան տարիներին եղել է ՀՕՊ–ի միավորման, այնուհետև՝ ԶՕ–ի կապի պետ:

ՏԵՐ–ՍԱՀԱԿՅԱՆ Ստեփան, XVIII դ–ի վերջին քառորդի ազգ–ազատագր. շարժման գործիչ: Մասնակցել է 1783–ին Էջմիածնում ***Դևոկաս Ա Կարնեցու*** գլխավորությամբ գումարված գաղտնի խորհրդակցությանը: 1783–ի աշնանը մեկնել է Արցախ և հանդիպել տեղի հայ մելիքների հետ: Հայաստանի ազատագրության խնդրով ցար. արքունիքի հետ բանակցելու համար 1784–ի ամռանը Տ–Ս., որպես «Արարատյան դեսպան», մեկնել է Ս. Պետերբուրգ:

ՏԵՐ–ՍԱՀԱԿՅԱՆ Տիրան Սահակի (1904–1982), բուսաբույծ–ընտրասերումնաբան: Գղտ. գիտ. դ–ր (1948), պրոֆ. (1958): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1981): Աշխ–ները վերաբերում են Հայաստանում կարտոֆիլի կենսբ. առանձնահատկությունների, մշակության, սերմանյութի ընտրության, եգիպտացորենի հիբրիդների ընտրա–սերման հարցերին: Ստացել է Աբովյան–2 եգիպտացորենի հիբրիդը:

ՏԵՐ–ՍԱՐԳԻՍՈՎ Ռուդոլֆ Միքայելի (1938–2016), ստորգետնյա հիդրոդինամիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1998): Դագի ՀամԳՀԻ կենտրոնի տնօրեն, 2002–05–ին՝ գլխ. տնօրեն: Աշխ–ները վերաբերում են Արմ. և Արլ. Սիբիրի, մերձկասպյան, Տիմանո–Պեչորյան ավազանի գազ պարունակող հանքավայրերի մշակման և շահագործման, բնական պաշարների համալիր յուրացման ու օգտագործման հարցերին:

ՌԴ Բն. (1993), Հանք. գործի (1996) ԳԱ–ների, Նավթի և գազի միջազգ. հաս. ակադ–ի նախագահության (2004), ՄԱԿ–ի գազի եվրոպ. հանձնաժողովի աշխ. խմբի մշտ. (2001) անդամ:

ՏԵՐ–ՄԱՐԳՍԵՆՅ (Տևկանց) Արիստակես (1844–1896), հոգևոր և հաս. գործիչ, բանահավաք: Սեդրակ և Երեմիա ***Տեր–Մարգսենցների*** եղբայրը: 1884–ին՝ Նարեկավանքի վանահայր, 1890–ին՝ Տրապիզոնի հոգևոր առաջնորդ, 1894–ին՝ Վարագավանքի վանահայր: Սպանվել է հայկ. կոտորածների ժամանակ: Հրատարակել է «Պանդուխտ վանեցին: Նամակներ, երգեր, առածներ, առեղծուածներ...» (1875) և «Հայերգ» (1882) ժող–ները, հեղինակ է «Այցելութիւն ի Հայաստան 1878 թ.» (հրտ.՝ 1985) ուղեգրության: Սպանվել է հայկ. կոտորածների ժամանակ:

ՏԵՐ–ՄԱՐԳՍԵՆՅ (Տևկանց) Երեմիա, **Երեմիա եպիսկոպոս** (1829–1885), հոգևոր և հաս–քաղ. գործիչ, բանասեր: Արիստակես և Սեդրակ ***Տեր–Մարգսենցների*** եղբայրը: Եղել է Վարագավանքի վանահայրը, Վանի, ապա՝ Բիթլիսի, Մուշի, Չմշկածագի, Արաբկիրի, Խարբերդի հայոց հոգևոր առաջնորդ, Կ. Պոլսի պատարիարք. փոխանորդ: 1862–ի Զեյթունի ապստամբության օրերին զեյթունցիներին օգտին հանգանակություն կազմակերպող ընկ–յան նախագահ: Հեղինակ է «Հայրենասիրութիւն հայոց» (1872), «Ճանապարհորդութիւն Բարձր Հայք և Վասպուրական 1872–1873 թթ.» (հրտ.՝ 1991) աշխ–ների:

ՏԵՐ–ՄԱՐԳՍԵՆՅ (Տևկանց) Սեդրակ (1845–1938), գրող, հրապարակախոս, հաս–քաղ. գործիչ: Արիստակես և Երեմիա ***Տեր–Մարգսենցների*** եղբայրը: Հեղինակ է «Վառարանի մը կայծեր» (1875) բանաստեղծությունների ժող–ի, «Շահէ՛նն ի Սիպիր կամ Գաղթական հայր» (1877) վեպի:

ՏԵՐ–ՄԱՐԳՍՅԱՆ Մեխակ Պողոսի (1935–2014), հրտ.: 1971–75–ին՝ ԵՊՀ տպարանի, 1986–91–ին՝ «Պարբերական» արտագրահրտչ. միավորման տնօրեն, 1991–2014–ին՝ ***«Ոսկան Երևանցի»*** տպագրատան հիմնադիր–տնօրեն: Հեղինակ է «Ես էլ եկա.... որ անցնեմ» (2014) ինքնակենսագր. երկի: ՀՀ ՄՆ ոսկե (2010), «Մովսես Խորենացի» (2012) մեդալներ:

ՏԵՐ–ՄԱՐԳՍՅԱՆ (Տեր–Սարկիսով, Սաթունց) Քրիստափոր Բոգդանի (1875–1917), ճարտ.: Նրա նախագծերով Թիֆլիսում կառուցվել են Վրաց ազնվականության ընկ–յան թատրոնը (1905–08), Վորոնցով–Դաշկովի կենտր. գրասենյակի եռահարկ շենքը (1908, հետագայում՝ Վրաստանի ԳԱ լեզվաբ–յան ինստ.), գեն. Մ. Պ. Փրոմյանի բնակելի և եկամտաբեր տունը (1906–14), բժիշկ Շահմուրադյանի («Տարվա լավագույն տուն» մրց., հետագայում՝ ֆիզիոլոգիայի և ախտաբանության ինստ.), ճարտարագետ Ղալամյանի (երկուսն էլ՝ 1910) և ուր. տներ: Ճարտ. և գեղ. հատկանիշներով, ներսի հարուստ հարդարանքով (ոսկեպատ, քանդակազարդ առաստաղներ ևն) առանձնանում է Ալեքսանդր Մանթաշյանի երկհարկ պալատը (այժմ՝ Վրաստանի արվ–ների տուն):

ՏԵՐ–ՄԵՄՅՈՆՈՎ Նիկոլայ Գևորգի (1897/98–1960), դերասան: ՀԽՍՀ ժող. արտիստ (1954): 1947–ից՝ Երևանի Կ. Ստանիսլավսկու անվ. ռուս. թատրոնի առաջատար դերասաններից (Պերչիխին՝ Մ. Գորկու «Քաղքենիներ», Բուբլիկ՝ Ա. Ե. Կոռնեյչուկի «Պլատոն Կրեչետ», Նիկոլայ Ալեքսեևիչ՝ Վ. Ս. Ռոզովի «Կյանքի մի էջը», ևն):

ՏԵՐ–ՄԻՄՈՆՅԱՆ (Սիմոնյան) Դրաստամատ Ասքանազի (1895–1937), կուս., պետ. գործիչ, լրագրող, հրապարակախոս: 1921-ին՝ Զանգեզուրի արտակարգ կոմիսար, այնուհետև՝ ՀԽՍՀ սոց. ապահովագրության, ապա՝ Լուսավորության ժողկոմ, 1934-ին՝ ՀԳՄ 1-ին նախագահ, Փարիզի *«Երևան»* (1928) թերթի, Երևանի «*Նոր ուղի*» հանդեսի խմբ.: 1932-ին նախաձեռնած 1-ին՝ «Հայկական խորհրդային հանրագիտարանի» գլխ. խմբ. (լույս է ընծայվել միայն հ. 1-ի I պր-ը 1935-ին): Անհատի պաշտամունքի զոհ:

ՏԵՐ–ՍԻՄՈՆՅԱՆ Մարգարիտ Պողոսի (ծ. 1928), երաժշտագետ: Արվեստագիտ. թեկնածու (1968): ՀՀ արվ. վաստ. գործիչ (1990): Հեղինակ է «Սարգիս Բարխուդարյան» (1968), «Էդվարդ Միրզոյան» (ռուս., 1969), «Հայաստանի կամերագործիքային անսամբլային երաժշտություն» (ռուս., 1974) գրքերի, համահեղ.՝ «Արամ Խաչատրյան» (ռուս., 1980) ժող-ի: 1992–ից՝ ԱՄՆ-ում:

ՏԵՐ–ՍՏԵՓԱՆՅԱՆ Անդրանիկ Սմբատի (1918–1996), հրթիռ. տեխնիկայի բնագավառի կոնստրուկտոր և արտադրյան կազմակերպիչ: Սոց. աշխ. հերոս (1981): 1966–71-ին՝ Կոլոմնայի (Մոսկվայի մարզ) մեքենաշին. ռազմ. ձեռն-յան գլխ. տնօրեն: Մասնակցել է ռազմ. սպառազինության, այդ թվում՝ «Մալյուտկա», «Շտուրմ-Ս», «Շտուրմ-Վ» հակատանկ., «Մտրելա-2, -2Մ, -3» , «Իգլա-1» շարժ. զենիթ., «Տոչկա-1, -Ու» մարտավար. հրթիռ. համալիրների մշակմանն ու արտադրյանը: ԽՍՀՄ Պետ. (1969), Լենինյան (1979) մրց-ներ, Լենինի (2) և այլ շքանշաններ:

ՏԵՐ–ՍՏԵՓԱՆՅԱՆ Արմեն Գառնիկի (ծ. 1946), բանասեր, աղբյուրագետ, մատենագետ: Բանասիր. գիտ. թեկնածու (1986): Գառնիկ *Ստեփանյանի* որդին, Պերճ *Ստեփանյանի* եղբայրը: 1992–ից՝ «Աստվածաշնչային մեկնություններ» մատենաշարի գլխ. խմբ.: Հրտ-յան է պատրաստել Կորյունի «Վարք Մաշտոցի»-ն (6 լեզվով, 2005), աշխատասիրել Հովհաննես Սուշի Որդու երկերը, կազմել է «Մայր ցուցակ Փարիզի Ազգային գրադարանի հայերեն ձեռագրերի» (ֆրանս., 1998), «Սբ Գրքի հայերեն մեկնությունների մատենագիտությունը» (2002, երկուսն էլ՝ համահեղ.):

ՏԵՐ–ՍՏԵՓԱՆՅԱՆ Գևորգ Եսայու (1907–2006), ճարտարագետ-երկրաբան, էկոլոգ: Տեխ. գիտ. դ-ր (1956), պրոֆ. (1960): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996): Աշխ-ները վերաբերում են բնական լանջերի կայունությանը և սողանք. երևույթներին:

ՏԵՐՎԻՇՅԱՆ Սերովբե (1846–1892), լեզվաբան, խմբ.: ՎննՄՄ անդամ (1864): 1887–88-ին՝ «Լեզու» հայ. առաջին լեզվաբ. հանդեսի հիմնադիր-խմբ.: Հեղինակ է «Սրբերի վարքը» (1871, հ. 2, հայատառ թուրք.), «Հայկականք: Հին հայերենի Ք տառը» (գերմ., 1877), «Հնդեվրոպական նախալեզու» (1885) աշխ-ների, «Այրի մայրն ու միամօր որդեակը» (1871) ողբերգության: Թարգմանել է Ս. Հուստինոսի «Պատասխանատուութիւնք» (գրաբար, հ. 1–2, 1872) կրոնաբարոյախոս. երկը:

ՏԵՐՏԵՐՅԱՆ Ավետ (Ալֆրեդ) Ռուբենի (1929–1994), կոմպոզիտոր, մանկավարժ: ՀՀ (1984), ԽՍՀՄ (1991) ժող. արտիստ: Իրինա *Տիգրանովայի* ամուսինը, Ռուբեն *Տիգրանյանի* հայրը: Հեղինակ է սիմֆոնիաների (1969–89), «Կրակե օղակ» (1967, 2-րդ խմբագրությունը՝ 1977), «Երկրաշարժ» (ըստ Հ. Ֆոն Կլայստի, 1984) օպերաների, «Ռիչարդ III-ի մենախոսությունները» բալետի (1979), «Հայրենիք» (1957), «Հեղափոխություն» (1960) վոկալ-սիմֆ. շարքերի, նաև լար. կվարտետների (1963, 1991), թավջութակի և դաշնամուրի սոնատի (1955), երգերի, թատրոնի և կինոյի երաժշտության («Երևանյան օրերի խրոնիկա», 1972, «Քամի ունայնության», 1989, «Հին աստվածներ», 1993, երեքն էլ՝ գեղ., ևն):

ՀԽՍՀ Պետ. (1977), Արամ Խաչատրյանի անվ. (1993) մրց-ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (1998):

ՏԵՐՏԵՐՅԱՆ Արսեն Հարությունի (1882–1953), գրականագետ-քննադատ: ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1943): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1940): Հիմնավորել է հոգեբ. մեթոդի ինքնությունը հայ գրականագիտ-քննադատ. մտքի պատմության մեջ, «գրականության փիլիսոփայության» ոլորտում սահմանել է գեղեցիկի, տաղանդի, գեղագիտ. իդեալի կատեգորիաները: Հեղինակ է «Մուրացան» (1936–39), «Երվանդ Օտյանի ստեղծագործությունը» (1937), «Րաֆֆու «Սամվել» պատմական վեպը» (1940), «Աբովյանի ստեղծագործությունը» (1941), «Պարոնյանի գեղագիտական հայացքները» (1941), «Վալերի Բրյուսովը և հայ կուլտուրան» (1944), «Պերճ Պռոշյան» (1955), «Շիրվանզադեի գրական տիպերի հանրագիտարանը» (1959) և այլ աշխ-ների, որտեղ գր-գեղ. երևույթները քննել է պատմ., տիպաբան., գործառութ. համարժեքների միասնության մեջ:

ՏԵՐՏԵՐՅԱՆ Եղիշե (Եղիազար), **Եղիվարդ** (1910–1990), բանաստեղծ, խմբ.: Արք. (1951-ից): 1960–90-ին՝ Երուսաղեմի հայոց պատրիարք, 1937–45-ին՝ Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի ուսուցիչ, նաև տեսուչ, 1965–90-ին, միաժամանակ՝ *«Միռն»* ամսագրի խմբ.: Հեղինակ է «Մագդաղինէն մեղրամոմէ» (1941), «Խորտակման գիշերներ» (1943), «Լեռան վրայէն: Երանիներ» (1945), «Օտարականը» (1966), «Մեղքի շուշաններ» (1995) բանաստեղծությունների, «Ոսկեմատեան» (2010) քարոզների ժող-ների, «Նարեկը հայ գրականութեան մէջ» (1947), «Լուսաւորիչը» (1987) և գրականագիտ. այլ աշխ-ների, «Վարդանանք» (1951) հերոսապատում-թատերգության:

ՏԵՐՏԵՐՅԱՆ Եվա Եփրեմի (ծ. 1928), ֆիզիոլոգ-ճառագայթակենսաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1989), պրոֆ. (1991): Հակոբ *Տերտերյանի* քույրը: Աշխ-ները վերաբերում են հավերի հետսաղմն. օնտոգենեզում և կենսբ. ակտիվ նյութերի օգտագործման ժամանակ լիպիդների փոխանակության և մարսող. օրգանների ֆունկցիայի ուսումնասիրությանը:

Ամերիկ. կենսագր. ինստ-ի 2002-ի «Տարվա կին», ՀՀ անասնաբուժ. (կենդանաբուժ. բժշկագիտ-յան) ԳԱ անդամ (2004):

ՏԵՐՏԵՐՅԱՆ Հակոբ Եփրեմի (1924–1996), կենդանաբան-միջատաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1989): Եվա *Տերտերյանի* եղբայրը: Աշխ-ները վերաբերում են արյունածուծ երկթևանիների որոշ խմբերի (մլակներ, մժղուկներ, մոծակներ ևն) կարգաբանությանը, ձևաբանությանը, էկոլոգիային, կենսբ-յանը ևն: Համամիութ. միջատաբան. ընկ-յան հայկ. բաժանմունքի նախագահ (1980–89):

ՏԵՐՏԵՐՅԱՆ Մուրադ (Խորոխոնցի Մուրադ, ծ. թ. անհտ–1915), ազգ–ազատագր. պայքարի մարտիկ, խմբապետ: Հնչակյան կուս-յան գործիչ: Գլխավորել է Պարսկաստանից Արմ. Հայաստան ռազմամթերք տեղափոխելու գործը: 1905-ի հայ-թաթար. ընդհարումների ժամանակ եղել է Թիֆլիսում: 1914-ի սեպտ-ին ձերբակալվել է, բանտից փախել և մինչև 1915-ի սեպտ. 22-ն անցել է Դերսիմ, որտեղ և զոհվել է:

ՏԵՐՏԵՐՅԱՆ Ռուբեն Ավետի (ծ. 1959), երաժշտագետ, մանկավարժ: Ավետ *Տերտերյանի* և Իրինա *Տիգրանովայի* որդին: Հեղինակ է «Ավետ Տերտերյան. զրույցներ, ուսումնասիրություններ, ասույթներ» (ռուս., 1988) ժող-ի, «Երաժշտական դրամատուրգիա» (ռուս., 1988), «Ավետ Տերտերյան. Երկխոսություններ» (2011, վերահրտ.՝ ռուս., 2014, անգլ.՝ 2015) գրքերի, պոլիֆոնիայի 2 դասագրքի (2012, Օ. Վանեգոսի հետ):

ՏԵՐՏՈՒՂԻԱՆՈՍ (Tertullianus) Քվինտոս Սեպտիմիոս Ֆլորենս (մոտ 160–220-ից հետո), քրիստ. աստվածաբան և գրող: Լատ. հայրաբան. դպրոցի և եկեղեց. լատ-ի հիմնադիրը: Իր ժամանակի քրիստ. մտածողների աստվածաշնչ. ուսմունքները և հուն. փիլ-յունը մեկ համակարգի մեջ միավորելու ձգտմանը հակառակ՝ Տ. ամեն կերպ ընդգծել է հավատի և բանականության խզվածությունը: Հռոմ. պետ. կարգին հակադրել է կինիկների ոգով ըմբռնած աշխարհաքաղաքացիությունը (կոսմոպոլիտիզմ) և քաղ-յան բարոյական բոյկոտը:

ՏԵՐՐԻ (Terry), **Թերրի**, Էլեն Ալիս (1847–1928), անգլիացի դերասանուհի: Հ. *Քրեյգի* մայրը: 1878–1902-ին՝ Լոնդոնի «Լիցեում» թատրոնի (1878–98-ին՝ ղեկ., Հ. Իրվինգի հետ) դերասանուհի (Մարգարիտ՝ Յ. Վ. Գյոթեի «Ֆաուստ», Օֆելյա՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», ևն): 1902-ից ղեկավարել է «Իմպերիալ» թատրոնը, բեմադրել պիեսներ որդու հետ (Վ. Շեքսպիրի «Ոչնչից մեծ աղմուկ», 1903, ևն): Նկարահանվել է կինոյում:

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ, Հայր մեր (Pater noster), քրիստոնյաների գլխ. աղոթքը, որը, ըստ Աստվածաշնչի, որպես ճշմարիտ աղոթքի օրինակ՝ աշակերտներին հայտնել է Հիսուս Քրիստոսը՝ նրանց խնդրանքով. «Հայր մեր, որ յերկինս ես, Սուրբ եղիցի անուն Քո, եկեսցէ արքայութիւն Քո, եղիցին կամք Քո, որպէս յերկինս եւ յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր, որպես եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն, զի Քո է արքայութիւն եւ զօրութիւն, եւ փառք, յաւիտեանս, Ամէն»:

Տ. ա. հայտնի է Մատթեոսի (6,9–13) և Ղուկասի (11,2–4) Ավետարաններից: Տ. ա. օգտագործվում է քրիստ. ժամերգությունների ժամանակ:

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ, **Տաօրինական պատկեր**, Քրիստոսի մարդեղությանը նվիրված պատկերներ (ծնունդ, հրաշքներ, առակներ, չարչարանքներ): Տերուն.

շարքի 12 գլխ. պատկերներն են՝ «Ավետում», «Ծնունդ», «Մկրտություն», «Մուտք Երուսաղեմ», «Խաչելություն», «Յուղաբեր կանայք Տիրոջ գերեզմանի մոտ», «Համբարձում», «Դժոխքի ավերումը», «Հոգեգալուստ», «Տեառնընդառաջ»: Տերուն. բարձրարվ. պատկերներով հարուստ է հայկ. միջնադար. կերպարվ–ը:

ՏԵՐՈՒՆԻ Վահան Սիմոնի (1925–2010), նկարիչ: Ստեղծագործել է հիմնականում դեկորատիվ կիրառ. արվ–ի բնագավառում՝ հախճապակե և ճենապակե սափորներ, կիրառ. կենցաղ. այլ իրեր, մանրաքանդակներ («Մարո և Անուշ», 1956, մանրաքանդակ, «Հայաստան», 1999, «Հայկական մանրանկարչություն», 2001, երկուսն էլ՝ սափոր):

ՏԵՐՈՒՆՅԱՆ (Տեովլեթյան) Սմբատ Մարտիրոսի (1923–2016), բանաստեղծ, հաս. գործիչ: Հեղինակ է «Մինչև վերադարձ» (1946), «Համեցող այգաբացը» (1959), «Ճառագայթ ու մշուշ» (1968), «Տարագիր տաղեր» (1996) բանաստեղծությունների ժող–ների:

ՏԵՐ–ՕՀԱՆՈՎ (Տեր–Օհանյան) Արսեն Արամի (1924–1988), ՊԱԿ–ի գնդ. (1946): ԽՄ հերոս (1945): 1944–ին մասնակցել է Մոլդովայի և Լեհաստանի ազատագրմանը, 1945–ին՝ Օդերի գետանցմանը և Բեռլինի գրավմանը: Հերոսի կոչման արժանացել է 1945–ի հունվ. 14–ին Միխալով Դոլինի (Լեհաստան) բնակավայրի մոտ Պիլիցայի գետանցման և հենակետ նվաճելու մարտերում ցուցաբերած արիության համար:

ՏԵՐ–ՕՀԱՆՅԱՆ Անդրե (Ամուրյան, 1899–1980), բանասեր, խմբ.: 1937–42 և 1974–76–ին՝ «Ալիք», 1953–69–ին՝ «Ասպարէզ» օրաթերթերի խմբ., 1949–53–ին՝ «Արմենուհի» հանդեսի արտոնատեր: Հեղինակ է «Անցած օրերի շղթան» (1949) վեպի, «Հ. Յ. Դաշնակցութիւնը Պարսկաստանում» (1950), «Հ. Յ. Դաշնակցութիւն, Եփրեմ. Պարսկական սահմանադրութիւն» (հ. 1, 2, 1976, 1979) երկի, «Յարական «Օխրանա»–ի արխիվը» (1978) ուսումնասիրության ևն:

ՏԵՐ–ՕՍԻՊՅԱՆ Նինա Սամիկոնի (1909–2002), դերասանուհի: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1972): 1925–ից՝ Մոսկվայի Հեղյան (այժմ՝ Վ. Վ. Մայակովսկու անվ.) թատրոնի դերասանուհի (Կուկուշկինա՝ Ա. Ն. Օստրովսկու «Եկամտաբեր պաշտոն», Դայակ՝ Վ. Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ», Անարդա՝ Լոպե դե Վեգայի «Պարտիզպանի շունը»): Նկարահանվել է կինոյում («Հինգ երեկո», 1979, Մոսֆիլմ, «Տատիկի թոռը», 1980, Լենֆիլմ, ևն): ՌԴ «Պատվո շքանշան» (1998):

ՏԵՔԹԱՆԴԵՐ (Tectander), ֆոն դեր Յարել Գեորգ (ծ. թ. անհտ–1614), գերմանացի ուղեգրող: 1603–ից՝ Պարսկաստանում Գերմանիայի դեսպանորդ: Մասնակցել է Աբբաս I շահի 1604–ին Հայաստան կատարած արշավանքներին: Ներկա է եղել Երևանի պաշարմանը, այցելել է Էջմիածին, Նախիջևան և Ջուղա: 1605–ին Ռուսաստանով վերադառնալով Պրահա՝ կայսր Ռուդոլֆ II–ին ներկայացրել է ճամփորդության մանրամասն նկարագրությունը, որը, առանց Տ–ի գիտ–յան, շուտով հրատարակվել է առանձին գրքով:

ՏԵՔՍՏԻԼ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ (լատ.՝ textile – գործվածք), թեթև արդ–յան ճյուղերի խումբ, որոնք բուս., կենդ. և քիմ. (արհեստ. ու սինթետիկ) մանրաթելերի տարբեր տեսակներից պատրաստում են տեքստիլ գործվածք, տրիկոտաժ և այլ իրեր: Ներառում է տեքստիլ հումքի նախն. մշակման, բամբակի, վուշի, բրդի, մետաքսի, ոչ գործվածք., կանեփաթելիջուտի, ցանցահյուսության, տեքստիլ–գալանտերեայի, տրիկոտաժի, թաղեգործության ճյուղերը:

ՏԵՔՍՏՈԼԻՏՆԵՐ, շերտավոր պլաստիկներ՝ ջերմառեակտիվ սինթետիկ խեժերով տոգորված գործվածքի հիմքով: Տարբերում են իսկական Տ. (հիմքը՝ բամբակե գործվածք), ապակե Տ. (ապակե գործվածք), ասբո–Տ. (ասբեստ. գործվածք) և օրգ. Տ. (արհեստ. թելքերի գործվածք): Ունեն բարձրամուր հատկություններ, որոնք քիչ են կախված ջերմաստիճանից: Տ–ից պատրաստում են բարդ ձևերի խոշորաչափ շինվածքներ (օր.՝ ապակե տեքստոլիտից՝ նավիրաններ): Օգտագործում են նաև առանցքակալների, էլեկտրատեխ. մեքենամասերի և այլ դետալների ներդրակնեի արտադր–յան մեջ: Ասբո– Տ. կիրառում են որպես շփական նյութեր և հրթիռների ջերմամեկուսացման համար:

ՏԵՖԼՈՆ, *պոլիքառաֆտորէթիլեն* ապրանք. անվանումը. թողարկվում է ԱՄՆ–ում:

ՏԶԱՅԻՆ ՈՒԼԵՂԱԲՈՐԲ, սուր վիրուս. հիվանդություն՝ արտահայտված բնական օջախայնությամբ: Բնորոշ է գլխուղեղի ախտահարումը՝ լուծանքի զարգացմամբ: Վիրուսի աղբյուրը տարբեր կենդանիներն են, փոխանցողները՝ տզերը: Բուժումը՝ շիճուկաբուժություն:

ՏԶԱՄՊԱՆՆԵՐ, **ակարիցիդներ,** տզերի դեմ պայքարի քիմ. նյութեր: Տարբերում են յուրահատուկ (ազդում է միայն տզերի վրա) և միջատասպան–տզասպան նյութեր (ինսեկտոակարիցիդներ), որոնք կարող են ազդել ինչպես տզերի, այնպես էլ միջատների վրա:

ՏԶԵՐ (Acarina), *ածդակերպանների* դասի հոդվածոտանիների խումբ: Սովորաբար բաժանվում են ակարիֆորմների, պարազիտիֆորմների կարգերի: Խոտհունձ Տ. առանձնացնում են որպես ինքնուրույն կարգ կամ դասում են պարազիտիֆորմների կարգին: Երկ.՝ 0,05 *մմ* – 3 *սմ*: Հայտնի է մոտ 50 հզ. տեսակ: Բույսերի և գղտ. մթերքի վնասատուներ են, կենդանիների և մարդու մակաբույծներ, վարակիչ հիվանդությունների (ուղեղաբորբ, տենդ, տիֆեր, տուլարեմիա, ժանտախտ) հարուցիչների փոխանցողներ:

ՏԶԿԱՆԵՓ (Ricinus), **գերչակ**, իշակաթնուկազգիների ընտանիքի բազմամյա, ծառանման բույսերի ցեղ: Հայտնի է 1 տեսակ՝ սովոր. Տ.: Սերմերում պարունակում են գերչակի ձեթ (48–55 %): Մշակովի Տ–ի միջին բերքատվությունը 6,5 *գ/հա* է:

ՏԶՐՈՒԿՆԵՐ (Hirudinae), օղակավոր որդերի դաս: Երկ.՝ 0,5–20 *սմ*: Ունեն առաջային և հետին ծծիչներ: Հայտնի է 400 տեսակ: Ապրում են հիմնականում քաղցրահամ և ծով. ջրամբարներում, ցամաք. տեսակները՝ խոնավ արևադարձ. անտառներում: Մեծ մասը արյունածուծ է, որոնց թքագեղձերն արտադրում են ***հիրուդին***, որը խոչընդոտում է արյան մակարդումը: Բժշկ. Տ. օգտագործվում են մի շարք հիվանդությունների (սրտային անբավարարություն և անոթ. խանգարումներ) բուժման համար: ՀՀ Լոռու, Տավուշի, Արմավիրի մարզերի լճերում և ճահճուտներում հանդիպում են բժշկ. Տ–ի դեղատնային և վրաց. կամ պարսկ. տեսակները:

ՏԷՆ (տետրանիտրոպենտաէրիտրիտ), բարձրապիշրտվող պայթուցիկ նյութ, նիտրոթեթեր: Սպիտակ բյուրեղափոշի է: Պայթյուն. ջերմությունը՝ 5,8 *ՄՋ/կգ*: Զգայուն է հարվածի նկատմամբ: Օգտագործում են ճայթեցնող քուղերում, պատիճ–ճայթիչներում, պենտոլիտի բաղադրության մեջ:

ՏԻԱՄԱՏ, տիեզ. քառսը մարմնավորող աստվածություն աքքադ. դից–յան մեջ: Ըստ առասպելի՝ Տ–ին սպանել է ***Մարդուկ*** աստվածը և նրա մարմնից կերտել երկինքն ու երկիրը: Տ. պատկերվել է յոթգլխանի վիշապի տեսքով:

ՏԻԲԵԹ–ԲԻՐՄԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, չին–տիբեթ. լեզվաընտանիքի ճյուղ (մոտ 350 լեզու): Տարածված են Մյանմայում, Հս. Թաիլանդում, Վիետնամում, Չինաստանի, Նեպալի կենտրոնում, Բիրմայում, Բանգլադեշում, Հնդկաստանում ևն: Սովորաբար բաժանվում են 10 ճյուղի: Գր. լեզուներն են ***բիրմաներենը, տիբեթերենը,*** թանգութերենը, նևարերենը: Հիմնականում գործածում են հնդկագիր այբուբեններ, կան նաև սեփ. հիերոգլիֆ. համակարգով լեզուներ:

ՏԻԲԵԹԵՐԵՆ, *տիբեթցիների* լեզուն: Պատկանում է չին–տիբեթ. լեզվաընտանիքի տիբեթա–բիրման. ճյուղին: Հնագույն գրավոր հուշարձաններն ավանդվել են VII–X դդ–ից: Գիրը սերում է *բրահմիից*:

ՏԻԲԵԹԻ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ, Կենտր. Ասիայում, գլխավորապես՝ Չինաստանում: Տարածքը՝ մոտ 2 մլն *կմ*^{2}, միջին բարձր.՝ 4–5 հզ. *մ*: Շրջապատված է Կարակորում, Կունլուն, Սինո–Տիբեթյան և Հիմալայան լ–ներով:

ՏԻԲԵԹԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՇՐՋԱՆ, Տիբեթ (չին.՝ Սիցզան), Չինաստանի հվ–արմ–ում՝ Տիբեթի բարձրավանդակում: Տարածքը՝ 1221 հզ. *կմ*^{2}, բն.՝ մոտ 3 մլն (2010, հիմնականում՝ տիբեթցիներ): Վարչ. կենտրոնը՝ *Լհասա*:

ՏԻԲԵԹՅԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ, բուժման համակարգ. ձևավորվել է հին'հնդ. և հին'չին. բժշկագիտ–յան ազդեցությամբ և տարածվել Տիբեթի տարածքում V–VII դդ–ում: Լայնորեն կիրառվում են բուս. և կենդ. ծագման դեղանյութեր (մինչև 1000 անուն), սննդակարգ: Ժամանակակից բժշկագիտ–յան մեջ Տ. բ–յան գնահատականը միանշանակ չէ:

ՏԻԲԵԹՅՈՆԵՐ (ինքնանվանումը՝ պյորբա), ժողդ, Տիբեթի արմատ. բնակչությունը: Բնակվում են Չինաստանում (Տիբեթի ինքնավար շրջան, Դանսու, Յինհայ, Սիչուան, Յուննան պրովինցիաներ), որոշ մասը՝ Հնդկաստանում, Նեպալում և Բութանում: Ընդհ. թիվը՝ մոտ 7 մլն (2014): Խոսում են տիբեթերենի բարբառներով: Հավատացյալները հիմնականում լամայական են (բուդդայականության հս. ճյուղ):

ՏԻԲԵՐ, գետ Իտալիայում, խոշորագույնն Ապենինյան թ–կղզում: Երկ.՝ 405 *կմ*, ավազանը՝ մոտ 16,5 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 260 *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Ապենիններից, առաջացնելով դելտա՝ թափվում է Տիրենյան ծովը: Գործում են ջրէկներ: Ափին է Հռոմ ք–ը: Նավարկելի է Հռոմից ներքև:

ՏԻԲԵՐԻՈՍ (Tiberius) Կլավդիոս Ներոն (մ. թ. ա. 42–մ. թ. 37), Հռոմի կայսր՝ մ. թ. 14–ից՝ *Հուլիոս–Կլավդիոսների* հարստությունից: *Օգոստոսի* խորթ որդին և հաջորդը: Առաջին տարիներին կառավարել է ծերակույտի հետ համաձայնեցված, այնուհետև՝ ինքնիշխան: Հայաստանի նկատմամբ շարունակել է վարել Օգոս-

տոսի քաղ–յունը, ձգտել է դրածոների միջոցով Հայաստանը ենթարկել Հռոմի ազդեցությանը:

ՏԻԲՈՒԼԼՈՍ ԱԼԲԻՈՍ (Tibullus Albius, մ. թ. ա. մոտ 50–19), հռոմեացի բանաստեղծ: Տ. Ա–ի անունով պահպանվել է եղերերգությունների ժող.: *Թեմաներն են* ընտանեկան օջախը, ընկերուհու նկատմամբ հավատարմությունը, աստվածների մեծարումը, գյուղ. և ընտանեկան հանդեսները, պատերազմի, փառասիրության, հարստության ունայն մոլուցքի դատապարտումը: Ոճը նրբագեղ է, լեզուն՝ պարզ ու խիստ գրական:

ՏԻԳՐԱՆ (Խուբեսերյան Տիգրան, 1913–1991), քանդ., ճարտ.: Մանրաքանդակներում (առավելապես՝ բրոնզե և մարմարե կանանց ֆիգուրներ) մարմնաձևերի ընդհանրացմամբ հասել է դեկորատիվ հնչողության («Շամիրամ», «Լողացող կին», «Կոնտրալտո» ևն): Տ–ի նախագծով կառուցվել է Բեյրութի Սբ Նշան եկեղեցին (1938): «Բիգել» մրց. (1974, Փարիզ):

ՏԻԳՐԱՆ Երվանդյան, Հայոց թագավոր՝ մ. թ. ա. մոտ 560–525–ին: Հաջորդել է հորը՝ *Երվանդ Ա*–ին: Սակավակայացին: Վարել է Հայաստանը Մարաստանի գերիշխանությունից ազատագրելու քաղ–յուն՝ կողմնորոշվելով դեպի Աքեմենյան Պարսկաստանը: Տ. մասնակցել է Մարաստանի թագավոր Աստիագեսի (հայկ. աղբյուրներում՝ Աժդահակ) դեմ *Կյուրոսի* պատերազմին, որն ավարտվել է Մարաստանի պարտությամբ: Տ–ի տերության տարածքը մոտավորապես համապատասխանել է Հայկ. լ–աշխարհի սահմաններին: Հետագայում Կյուրոսը Հայաստանը վերածել է Աքեմենյան պետությանը ենթակա մարզի՝ սատրապության:

ՏԻԳՐԱՆ Կրտսեր (ծ. թ. անհտ–մ. թ. ա. մոտ 58), արքայազն, Ծոփքի հայոց փոխարքա՝ մ. թ. ա. մոտ 69–66–ին՝ *Արտաշեսյան* հարստությունից: *Տիգրան Բ* Մեծի որդին: Մ. թ. ա. 69–66–ին մասնակցել է հայ–հռոմ. պատերազմին: Մ. թ. 67–ին Միհրդատ VI Եվպատոսի դդմամբ ապստամբել է հոր դեմ և պարտվել: Տ. փախել է հռոմեացի զորավար Գնեոս Պոմպեոսի մոտ: Արտաշատի պայմանագրով (մ. թ. ա. 66)՝ Տ. ճանաչվել է Ծոփքի ու Կորդուքի թագավոր, ինչպես նաև Հայոց գահի ժառանգորդ՝ հոր մահից հետո: Այդ պայմանագրից դժգոհ՝ Տ. ընդվզել է Պոմպեոսի դեմ, որը կալանավորել է նրան և ընտանիքի հետ գերեվարել Հռոմ, ցուցադրել իր հաղթահանդեսում (մ. թ. ա. 61), բանտարկել, ապա մահապատժի ենթարկել:

ՏԻԳՐԱՆ Ա, Տիրան (մ. թ. ա. մոտ 181–95), Հայոց թագավոր՝ մոտ մ. թ. ա. 115–ից: *Արտաշես Ա*–ի որդին: Արտաշես Ա–ի օրոք վարել է Հայաստանի արմ. զորավարությունը: Ավագ եղբոր՝ *Արտավազդ Ա*–ի հետ դավադրաբար սպանել է կրտսեր եղբորը՝ քրմապետ Մաժանին:

ՏԻԳՐԱՆ Բ Մեծ (մ. թ. ա. 140–55), Հայոց թագավոր՝ մ. թ. ա. 96–ից՝ *Արտաշեսյան* հարստությունից: *Տիգրան Ա*–ի որդին: Մ. թ. ա. 112–ին *Արտավազդ Ա*–ն գահաժառանգ Տիգրանին, որպես պատանդ, տվել է պարթևներին: Մ. թ. ա. 96–ին պարթևներին զիջելով Հայաստանի հվ. գվո–ները՝ Տ. Բ ազատվել է պատանդությունից և ժառանգել Հայոց գահը: Մ. թ. ա. 94–ին Մեծ Հայքին է միացրել Ծոփքի թագավորությունը, 94–91–ին դաշինք է կնքել Պոնտոսի արքա *Միհրդատ VI Եվպատորի* հետ: Մ. թ. ա. 91–86–ին իրեն է ենթարկել Վիրքն ու Աղվանքը, 86–85–ին պարտության է մատնել Պարթևստանին, իրեն ենթարկել Ատրպատականն ու Հս. Միջագետքը: Մ. թ. ա. 83–ին ստացել է Սելևկյանների արքայական գահը, միաժամանակ տիրել է Կոմմագենեին և Դաշտային Կիլիկիային: 83–78–ին հիմնադրել է Տիգրանակերտ մայրաքաղաքը: Մ. թ. ա. 73–72–ին ճնշել է իր ավագ որդու՝ Զարեհի ապստամբությունը: Մ. թ. ա. 69–ին Հռոմի դեմ սկսված պատերազմի 1–ին փուլի պարտություններից հետո (տես *Տիգրանակերտի ճակատամարտ մ. թ. ա. 69*)՝ Տ. Բ կազմակերպել է համաժող. դիմադրություն հռոմ. նվաճողների դեմ: *Արածանիի ճակատամարտում* (մ. թ. ա. 68) ծանր պարտության է մատնել Լուկուլլոսի բանակին: Մ. թ. ա. 67–66–ին Տ. Բ–ի դեմ ապստամբել է որդին՝ *Տիգրան Կրտսերը*: Մ. թ. ա. 66–ին Հայաստան ներխուժած պարթևներին Արտաշատի մոտ պարտության մատնելով և պայմանագիր կնքելով Պոմպեոսի հետ (տես *Արտաշատի պայմանագիր մ. թ. ա. 66*)՝ Տ. Բ կանխել է Հայաստանի համար երկու ճակատով կորստաբեր պատերազմի վտանգը՝ պահպանելով երկրի պետ. ինքնիշխանությունը և տարածք. ամբողջականությունը:

ՏԻԳՐԱՆ Գ (ծ. թ. անհտ–մ. թ. ա. 8), Հայոց թագավոր՝ մ. թ. ա. 20–ից՝ *Արտաշեսյան* հարստությունից: *Արտավազդ Բ*–ի որդին: Հաջորդել է ավագ եղբորը՝ *Արտաշես Բ*–ին: Ակտիումի ծովամարտից (մ. թ. ա. 31) հետո Գայոս Օկտավիանոսի կարգադրությամբ տարվել է Հռոմ և դաստիարակվել նրա պալատում: Արտաշես Բ–ին տապալելու և Տ. Գ–ին գահ բարձրացնելու նպատակով՝ մ. թ. ա. 20–ին *Օգոստոս Օկտավիանոսը* բանակ է ուղարկել Հայաստան և Տ. Գ–ին հռչակել Հայաստանի թագավոր: Մ. թ. ա. 10–ին հրաժարվել է հռոմ. կողմնորոշումից և վարել անկախ քաղ–յուն:

ՏԻԳՐԱՆ Դ (ծ. թ. անհտ–1), Հայոց թագավոր՝ մ. թ. ա. 8–5 և մ. թ. ա. 2–մ. թ. 1–ին՝ *Արտաշեսյան* հարստությունից: *Տիգրան Գ*–ի որդին: Գահակալել է քրոջ՝ *Էրատոյի* հետ: Մ. թ. ա. 5–ին Օգոստոս Օկտավիանոս կայսեր Հայաստան ուղարկած բանակը տապալել է Տ. Դ–ին ու Էրատոյին, գահը հանձնել նրանց հորեղբորը՝ *Արտավազդ Գ*–ին: Սակայն ժողգ–ը մ. թ. ա. 2–ին ապստամբել է և վերստին գահ է բարձրացրել Տ. Դ–ին և Էրատոյին: Սպանվել է Հայաստան արշաված կովկաս. լեռնականների հարձակումը հետ մղելու ժամանակ:

ՏԻԳՐԱՆ Ե (ծ. թ. անհտ–36), Հայոց թագավոր՝ 6–ին: Հռչակել է Հռոմի Օգոստոս Օկտավիանոս կայսրը՝ *Արտավազդ Դ*–ի փոխարեն: Սակայն հայերն ապստամբել են և կրկին գահ բարձրացրել *Էրատոյին*: Տ. Ե փախել է Հռոմ, որտեղ գլխատել են Տիբերիոս կայսեր հրամանով: Մեզ են հասել Տ. Ե–ի դրամները՝ «Արքայի Մեծի Տիգրանի» հուն. մակագրությամբ:

«ՏԻԳՐԱՆ ԵՎ ԱԺԴԱՀԱԿ», հին հայկ. առասպելավիպ. շարքին («Վիպասանք») պատկանող առանձին վեպ («Մեծն Տիգրանի վեպ»)՝ ավանդված Մովսես Խորենացու Պատմությամբ (Ա, ԻԴ–Լ): Հիմքում ամպրոպի աստծու (Տիգրան) և վիշապի (Աժդահակ) կռվի առասպելն է, որը հայ հին վիպ. ավանդության մեջ պատմականացել է, կապվել Հայոց Երվանդյան Տիգրան (VI դ., մ. թ. ա.) և Արտաշեսյան Տիգրան Մեծ (I դ., մ. թ. ա.) թագավորների անուններին ու արարքներին, Մարաստանի (Միդիա) տիրակալների հետ նրանց հարաբերություններին:

ՏԻԳՐԱՆ Զ, Հայոց թագավոր՝ 60–61–ին: Տիգրան Ե–ի եղբոր՝ Ալեքսանդրի որդին: *Ներոն* կայսրը Տ. Զ–ին նշանակել է Մեծ Հայքի թագավոր՝ ի հակակշիռ հայկ. գահի հավակնորդ *Տրդատ Ա*–ի: 61–ին Տ. Զ փորձել է վերագրավել Մծբին ք., սակայն անհաջողության է մատնվել: 61–ի վերջին պարթև. ուժերը Տրդատ Ա–ի գլխավորությամբ մտել են Հայաստան, Տ. Զ. գահընկեց է արվել: Հայոց գահն անցել է Տրդատ Ա–ին:

ՏԻԳՐԱՆ ՀՈՆԵՆՑ, XIII դ–ի հայ խոշոր մեծատուն և բարեգործ: Անիում զբաղեցրել է բարձր պաշտոն, ձեռք է բերել խոշոր կալվածներ, գյուղեր, ձիթհաններ, ջրաղացներ ևն: 1213–ին իր միջոցներով նորոգել է Անիի Մայր տաճարի աստիճանները, 1215–ին կառուցել իր անունով կոչված եկեղեցին, նաև Կուսանաց վանքի Սբ Հռիփսիմե եկեղեցին:

ՏԻԳՐԱՆ ՀՈՆԵՆՑԻ ԵԿԵՂԵՑԻ, **Անիի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի**, ճարտ. հուշարձան Անիում, կառուցել է *Տիգրան Հոնենցը* 1215–ին: Մեկ զույգ մույթերով գմբեթավոր դահլիճ է՝ շքեղ հարդարված ճակատներով, բազմանիստ թմբուկով գմբեթով, որոնք զարդարված են զույգ որմնասյուներով նրբագեղ կամարաշարով, հարթաքանդակներով ևն: 1215–51–ին եկեղեցուն կցել են գավիթ–սրահ և մատուռ, ներսը զարդարել որմնանկարներով:

«ՏԻԳՐԱՆ ՄԵԾ», հրտչ–յուն: Հիմնադրվել է 1968–ին Երևանում՝ որպես ՀԿԿ ԿԿ հրտչ–յուն: 1991–ից՝ «Պարբերական», 1997–ից՝ սեփականաշնորհվել է, վերանվանվել «Տ. Մ.»: Տպագրում է հանրագիտարան., գեղ. գրկ–յուն, դասագրքեր, ամսագրեր, գովազդ. նյութեր, պաստառներ, բուկլետներ ևն: Տնօրեններ՝ Հակոբ Կարապետյան, Լևոն Վարդանյան, Բենիկ Վարդազարյան, Բենիկ Գանջալյան, Սոս Մովսիսյան, Եղիշե Հովհաննիսյան, Ալեքսանդր Քյուրքչյան, Գրիգորի Թորոսյանց, Վրեժ Մարկոսյան, Տիգրան Քոթանջյան (2013–ից):

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ, **Մարտիրուպոլիս, Նփրկերտ,** ք. Աղձնիք՝նինգ–ի Նփրկերտ գվո–ում՝ Արմ. Տիգրիսի ձախակողմյան վտակ Քաղիրթի օժանդակ Նիկեփորիո՝նի (Ֆարկինսու) ափին: Աղբյուրներում և պատմագիտ–յան մեջ հաճախ շփոթվել է *Դիարբեքիրի* (Ամիդ) հետ: Հիմնադրել է *Տիգրան Բ* Մեծը մ. թ. ա. 83–78–ին՝ այն դարձնելով Հայաստանի մայրաքաղաքը: Շրջապատված է եղել մոտ 25 *մ* բարձրությամբ պարսպապատով, որի մեջ ներսի կողմից կառուցված են եղել պահեստներ, զինանոցներ, ախոռներ: Ունեցել է միջնաբերդ: Գործել է թատրոն (պահպանվել են շենքի ավերակները): Տ. նվաճվել և մասնակիորեն ավերվել է *Լուկուլլոսի* մ. թ. ա. 69–ի արշավանքի ժամանակ: *Արշակունիների* օրոք եղել է Աղձնիքի բդեշխության կենտրոնը: VI դ–ի կեսին հիշվում է որպես Չորրորդ Հայքի կենտրոն: XII դ–ից կորցրել է նշանակությունը և վերածվել աննշան բնակավայրի: Ներկայում ավերակ է: Պեղվել է մասնակիորեն:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ, **«Տկոակերտ»**, ք. ԼՂՀ Մարտակերտի շրջանում՝ Խաչեն գետի

աջ ափին՝ Վանքասար լ–ան և Շահբուլաղ կոչվող աղբյուրի մոտ: Կառուցել է *Տիգրան Բ* **Մեծը** մ. թ. ա. I դ–ում: Հիշատակվում է *Սերևոսի* և *Մովսես Կաղանկատվացու* երկերում: Որպես բնակավայր՝ գոյություն է ունեցել մինչև ուշ միջնադար՝ Խաչենի իշխանության տարածքում: Հայտնաբերվել է 2005–ին: Պեղումներն սկսվել են 2006–ից: Հայտնաբերվել և ուսումնասիրվել են քաղաքի միջնաբերդը, պարիսպները, կենտր. մասը և վաղմիջնադար. բազիլիկ եկեղեցին: Տ. հիմնականում կառուցվել է սպիտակ կրաքարով: Հայտնաբերվել են նաև միջնադար. տարբեր արհեստանոցների հետքեր, ապարանջաններ (XII–XIII դդ.), խճանկար–ապակիների բեկորներ, ջնարակապատ խեցեղեն ևն:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԲԱԲԲԱՌ, հայ–ի «կը» ճյուղի բարբառ: Խոսվել է Տիգրանակերտ ք–ում և մերձակա վայրերում: Ունի երկաստիճան խլազուրկ (բ, փ) բաղաձայն. համակարգ:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԹԱՏՐՈՆ, կառուցել է *Տիգրան Բ* **Մեծը** *Տիգրանակերտում* մ. թ. ա. 69–ին, թատրոնի համար փոքրասիական երկրներից գերեվարել է հույն դերասանների: Ենթադրվում է, որ Տիգրան Բ–ի թագավորության հետագա տարիներին ևս թատրոնը գործել է: *Արտավազդ Բ* հոր ստեղծած թատեր. ավանդույթը շարունակել է Արտաշատում (տես *Արտաշատի թատրոն* **հին**):

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ Մ. Թ. Ա. 69, տեղի է ունեցել հռոմ. (40 հզ.) և հայկ. (80–90 հզ.) զորքերի միջև Հայաստանի մայրաքաղաք *Տիգրանակերտի* մոտ հոկտ. 6–ին: Հայոց բանակը պարտություն է կրել, Տիգրանակերտը նվաճվել ու կողոպտվել է, Տիգրան Բ–ի միջերկրածով. տիրույթներն անցել են Հռոմին: Սակայն *Արածանիի ճակատամարտում* (մ. թ. ա. 68) Լուկուլլոսի բանակը պարտություն է կրել և նահանջել Հայաստանից:

ՏԻԳՐԱՆՅԱՆ Արմեն Տիգրանի (1879–1950), կոմպոզիտոր, խմբավար, հաս. գործիչ: ՀԽՍՀ (1935), ՎԽՍՀ (1936) արվ. վաստ. գործիչ: Էդմոնդ և Վարդան *Տիգրանյանների* հայրը: Ալեքսանդրապոլում կազմակերպել է քառաձայն ժող. երգչախումբ (1902): Հեղինակ է «Անուշ» (ըստ Հ. Թումանյանի, 1908–12), «Դավիթ Բեկ» (ըստ Րաֆֆու, 1941–50) օպերաների, «Լեյլի և Մեջնուն» դրամայի երաժշտության (1915), «Արևելյան պարի» (սիմֆ. նվագախումբ), «Շիրակ–Զմրուխտի» ֆանտազիայի, «Պարային սյուիտի», կանտատների, խմբերգ. երկերի, դաշնամուր. պիեսների, հայկ. ժող. երգերի (նաև խմբերգ.) մշակումների, թատեր. երաժշտության, երգերի («Ախ իմ ճամփեն», «Սև աչերեն») և այլ գործերի:

ՏԻԳՐԱՆՅԱՆ Էդմոնդ Արմենի (1911–1994), ճարտ.: ՀՀ վաստ. շինարար (1953): Արմեն *Տիգրանյանի* որդին, Վարդան *Տիգրանյանի* եղբայրը: Նրա նախագծերով Վրաստանում կառուցվել են Սևծով. երկթող. (Գագրա, Փոթի, Քոբուլեթ ևն) կայարանների շենքերը, կամուրջներ, Երևանում՝ երկթող. կայարանի (1949–55), ԵՊՀ (1949–65, 1971, 1982), ՆՕՔԻ (1958–65) համալիրները, Արմ. օդանավակայանը (1958), Ձերմուկում՝ № 1 առողջարանի շենքը (1962) և այլ կառույցներ: Հեղինակ է «Գաբրիել Տեր–Միքելյան» (1981), «Հայ ճարտարապետների գործունեությունը Անդրկովկասում. XIX դարի վերջ–XX դարի սկիզբ» (2000) և այլ աշխ–ների:

ՏԻԳՐԱՆՅԱՆ Լևոն Ակոբջանի (1842–1906), բժիշկ, բառարանագիր, թարգմանիչ: 1880–ին կազմակերպել է Երևանի Առողջապ. մշտ. հանձնաժողով, մշակել քաղաքի սանհիգիենա. վիճակի բարելավման միջոցառումներ: 1881–84–ին հրատարակել է «*Առողջապահական թերթ*» բժշկ. հանդեսը: 1890–ին Ա. Գ. Տեր–Գրիգորյանի հետ Երևանում հիմնադրել է անվճար հիվանդանոց չքավոր հիվանդների համար: Տ. հայ բժշկության մեջ առաջինն է տվել կանխարգելիչ բժշկության գաղափարը, ազգաբնակչության շրջանում տարածել սանհիգիենա. գիտելիքներ: Հեղինակ է «Մարմնամարզական կամ Անատոմիական բառարան…»–ի (1879), «Բառարան բժշկական բույսերի»–ի (1883), «Մարդակազմութիւն» (1881), «Մանկական պարտէզ» (1897) և այլ աշխ–ների:

ՏԻԳՐԱՆՅԱՆ Նիկողայոս Թադևոսի (1856–1951), կոմպոզիտոր, բանահավաք, դաշնակահար: ՀԽՍՀ ժող. արտիստ (1933): ՀԽՍՀ աշխ. հերոս (1936): Սիրեկան *Տիգրանյանի* և Մարիամ *Տիգրանյան–Տեր–Մսրպիրոսյանի* եղբայրը: Հայկ. ազգ. դաշնամուր. երաժշտության հիմնադիրներից: Առաջինն է ձայնագրել ու մշակել հայ աշուղների, դուդուկահարների, սազանդարների հեղինակած և կատարած երգերը («Քո փափագով», 1887, «Ձախորդ օրեր», 1896, ևն), պարեր («Դյուզ պար», 1887, «Թարս պար», «Ջուռնի տրնգի», «Ուզունդարա», «Վեր–վեր», բոլորը՝ 1890, «Վարդ կոշիկս», 1896, ևն), մուղամներ ու դաստգահներ («Բայաթի Շիրազ», 1889, «Շահնազ, 1895, «Չարգյահ», 1896, «Չորան բայաթի», «Շուշթար», երկուսն էլ՝ 1904, ևն): Փարիզի համաշխ. ցուցահանդեսի բրոնզե մեդալ (1900):

ՏԻԳՐԱՆՅԱՆ Ռուբեն Համբարձումի (ծ. 1938), նյարդաքիմիկոս: Բժշկ. գիտ. դ–ր (1968), պրոֆ. (1975): Աշխ–ները վերաբերում են տարբեր գերհուզ. և ծայրահեղ ներգործությունների ժամանակ մարդու և կենդանիների օրգանիզմներում տեղի ունեցող նյութափոխանակության բացահայտված խախտումների շտկմանը դեղամիջոցների կիրառմամբ:

ՏԻԳՐԱՆՅԱՆ Սարգիս Ավետիսի (1812–1875), թատերագետ, թարգմանիչ: Հայ թատերագիտ–յան հիմնադիրներից: Տ–ի գրաբար չափածո թարգմ–յամբ լույս է տեսել Ժ. Ռասինի «Գոթողիա» ողբերգությունը (1834, Մոսկվա), որի «Ինչ–ինչ զեղերերգութենէ» առաջաբանում անդրադարձել է ողբերգության և կատակերգության վերաբերյալ Դավիթ Անհաղթի մեկնություններին, նաև Մարիա Ալոիս Պիդուի «Մարտիրոսութիւն սրբոյն Հռիփսիմէի» (բեմ.՝ 1668, Լվով) հայ առաջին սրբախոս. ողբերգությանը, բնորոշել է կլասիցիստ. ու ռոմանտիկ. դրաման ևն:

ՏԻԳՐԱՆՅԱՆ Սիրեկան Թադևոսի (1875–1938), իրավաբան, հոգերան: Նիկողայոս *Տիգրանյանի* և Մարիամ *Տիգրանյան–Տեր Մսրպիրոսյանի* եղբայրը: ԵՊՀ հիմնադիր դասախոսներից: ՀՀ (1918–1920) ԱԳ (1918–19) և հանրային կրթության, արվ–ի (1919–ի հունիս–օգոստ.) նախարար: Զբաղվել է հայոց հին իրավունքի, հայկ. կանոնագրքերի ուսումնասիրությամբ «Հին հայկական կանոնագիրք» (ռուս., հ. 1, 1918, 2–րդ հատորը, որ ավարտել է 1935–ին, անտիպ է), նաև արլ. երաժշտության տես. հարցերով:

ՏԻԳՐԱՆՅԱՆ Վարդան Արմենի (1906/07–1974), կոմպոզիտոր: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1961): Արմեն *Տիգրանյանի* որդին, Էդմոնդ *Տիգրանյանի* եղբայրը: Հեղինակ է «Սոս և Վարդիթեր» (1957) օպերայի, «Մեծ հարսանիք» (1945), «Շիրակ, իմ սեր» (1970) օպերետների, «Աղբյուրի մոտ» երաժշտ. կատակերգության (1949), «Հանդիսավոր կանտատի» (1942), «Պարային սյուիտի» (1943), դաշնամուր. պիեսների, զուգանվագի (կլառնետ և դաշնամուր), վոկալ գործերի, թատեր. երաժշտության, աշուղ. երգերի մշակումների:

ՏԻԳՐԱՆՅԱՆ–ՏԵՐ–ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Մարիամ Թադևոսի (1882–1947), դաշնակահարուհի: Նիկողայոս և Սիրեկան *Տիգրանյանների* քույրը: Հանդես է եկել որպես մենակատար՝ երգիչներ Վ. Տեր–Առաքելյանի, Հ. Դանիելյանի, Վ. Արծրունու, ջութակահար Հ. Նալբանդյանի հետ: Եղել է Կոմիտասի, Ա. Սպենդիարյանի, Ն. Տիգրանյանի, Ս. Բարխուդարյանի, Ա. Տեր–Ղևոնդյանի և ուր. որոշ երկերի առաջին կատարողը:

ՏԻԳՐԱՆՈՎ (Տիգրանյան) Գևորգ Գրիգորի (1908–1991), երաժշտագետ, մանկավարժ: ՀԽՍՀ (1945) և ՌԽՖՍՀ (1979) արվ. վաստ. գործիչ: Իրինա *Տիգրանովայի* հայրը: Հեղինակ է «Հայկական երաժշտական թատրոնը» (հ. 1–4, 1956–88), «Հայաստանի օպերան և բալետը» (1966), «Հարո Ստեփանյան» (1967), «Արամ Իլյիչ Խաչատրյան» (1987, բոլորը՝ ռուս.) աշխ–ների, կազմել և խմբագրել է մի շարք ժող–ներ (ռուս.)՝ Բ. Վ. Ասաֆևի «Անդրանիկ Հայաստանի մասին» (1958), «Կ. Ս. Սարաջև. հոդվածներ, հուշեր» (1962), «Սովետական սիմֆոնիան 50 տարում» (1967) ևն: ՀԽՍՀ Պետ. մրց. (1979):

ՏԻԳՐԱՆՈՎԱ Իրինա Գևորգի (1936–2011), երաժշտագետ: Գևորգ *Տիգրանովի* դուստրը, Ավետ *Տերտերյանի* կինը, Ռուբեն *Տերտերյանի* մայրը: 1995–2011–ին՝ «Ավետ Տերտերյան» մշակութ. հիմնադրամի նախագահ: Հեղինակ է «Երաժշտությունն իմ կյանքն է», «Քնարական կերպարները Արամ Խաչատրյանի ստեղծագործություններում» աշխ–ների:

ՏԻԳՐԻՍ, Դկղաթ, գետ Հայկ. լ–աշխարհում և Միջագետքում: Հոսում է Թուրքիայի (450 *կմ*) և Իրաքի տարածքով (մասամբ՝ այդ երկրների հետ Սիրիայի սահմանով): Կազմավորվում է Արմ. Տ. և Արլ. Տ. գետերի միախառնումից: Տ–ի ակունքը համարվում է Արմ. Տ., որն սկիզբ է առնում Արղնիի լ–շղթայից (Հայկ. Տավրոսի համակարգ)՝ Արղանա և Ջիբենե օժանդակներով: Երկ.՝ 1900 *կմ*, ավազանը՝ 375 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1240 *մ*^{3}/*վ*, առլգն՝ մոտ 13000 *մ*^{3}/*վ* (Բաղդադ): Էլ–Քուռնա ք–ի մոտ միախառնվում է Եփրատին, կազմում Շատ էլ–Արաբ գետը և թափվում Պարսից ծոցը: Խոշոր վտակները՝ Խաբուր, Մեծ Զավ, Փոքր Զավ, Դիյալա ևն: Տ–ի ափերին են Դիարբեքիր (Թուրքիա), Մոսուլ, Բաղդադ, Էլ–Կութ, Ամարա (Իրաք) ք–ները: Տ–Եփրատի միջագետքը քաղաքակրթության հնագույն կենտրոններից է:

ՏԻԵԶԵՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **կոսմոլոգիա** (< հուն. cosmos – կարգ և … *լոգիա*), ֆիզիկայի բաժին, ուսմունք Տիեզերքի աստղագիտ. դիտումներով հասանելի մասի կառուցվածքի և էվոլյուցիայի մասին: Տ–յան

փորձն. հիմքն աստղագիտ. դիտումների և փորձարար. ֆիզիկայի տվյալներն են, տես. հիմքը՝ նյութի կառուցվածքը, փոխազդեցությունները և շարժ. օրենքները նկարագրող հիմն. ֆիզ. տեսությունները, նաև մաթ–ի, թվային մոդելավորման և այլ գիտ–յունների նվաճումները: *Հարաբերականության ընդհանուր տեսության* հիմքի վրա ստեղծվել է ստանդարտ տիեզերաբան. մոդել՝ հիմնված *մեծ պայթյունի* վրա, որն առաջացրել է նյութի Հաբլյան ընդարձակումը նախնական փոքր գրգռումներով: Վերջինից հետագայում գրավիտացիոն անկայունության հետևանքով զարգացել է Տիեզերքի կառուցվածքը: Ստանդարտ տիեզերաբան. մոդելը բացատրում է ստացված բոլոր դիտող. տվյալները, սակայն այդ մոդելի հանգուցային բաղադրիչները (մութ նյութ և մութ էներգիա) պահանջում են *տարրական մասնիկների* ստանդարտ մոդելի ընդարձակում: Ժամանակակից S. բնութագրվում է մնացուկ. (ռելիկտային) ճառագայթման անիզոտրոպության և բևեռացման, Տիեզերքի խոշորամասշտաբ կառուցվածքի և այլ երևույթների հաջորդված հետազոտություններով, վաղ տիեզերքի տեսության, տիեզ. ընդարձակման սկզբի հիմնախնդրի ինտենսիվ զարգացումով: Տիեզերաբան. հետևություններն ու ընդհանրացումները խոշոր աշխարհայացք. նշանակություն ունեն:

ՏԻԵԶԵՐԱԳՆԱՑՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՌԴ, հիմնադրվել է 1960–ին (1968–ից՝ Յ. Ա. *Գագարինի* անվ.): Գտնվում է Մոսկվայի մարզի Ջվյոզդնի ավանում:

ՏԻԵԶԵՐԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ, հիմնադրվել է 1950–ին: ՅՈՒՆԵՍԿՕ–ի և *Էկևկպրակապի միջազգային միության* առընթեր խորհրդատվ. կազմ–յուն: Միավորում է բնագավառի գիտ. կազմ–յունները: Կենտրոնատեղին՝ Փարիզում:

ՏԻԵԶԵՐԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ, **աստղագնացություն**, գիտ–յան և տեխնիկայի տես. և գործն. ճյուղերի համախումբ, որն ապահովում է թռչող սարքերով տիեզ. տարածության և արտերկր. օբյեկտների հետազոտումն ու յուրացումը: S. ներառում է տիեզ. թռիչքների տեսությունը (հետագծերի հաշվարկներ ևն), գիտատեխ. մշակումները (հրթիռների, շարժիչների, կառավարման համակարգերի, ինքնաշխատ կայանների ու տիեզերանավերի, գիտ. սարքերի նախագծում, հետագծային չափումների, ուղեծրակայանների կազմակերպում և մատակարարում ևն), բժշկականսար. հետազոտությունները (կենսաապահովման տիեզերանավ. համակարգերի ստեղծում) գերծանրաբեռնվածության, անկշռելիության, ճառագայթման հետևանքով մարդու օրգանիզմում ընթացող անբարենպաստ երևույթների չեզոքացումը, իրավաբ. միջազգ. խնդիրները (տիեզերատարածության և մոլորակների օգտագործման խնդիրների իրավ. կարգավորում ևն): Տիեզ. դարաշրջանի սկիզբը 04.10.1957–ին է (ԽՍՀՄ–ում արձակվել է առաջին ԵԱԱ), մարդու առաջին տիեզ. թռիչքը՝ 12.04.1961–ին (Յ. Ա. *Գագարին*, ԽՍՀՄ), մարդու առաջին վայրէջքը Լուսնի վրա՝ 21.07.1969–ին (Ն. *Արմսթրոնգ*, Է. *Օլդրին*, ԱՄՆ): Տիեզ. սարքերի թռիչքների ապահովման համար ստեղծվել են տիեզերակայաններ, կառավարման կապի, իջեցվող սարքերի հայտնաբերման և տարհանման երկր. ծառայություններ: 1980–ական թթ.–1990–ական թթ–ի սկզբից պլանաչափորեն իրականացվում են օդաչուավոր թռիչքներ, գիտ. և կիրառ. մի շարք խնդիրների լուծումների համար օգտագործվում են ուղեծրակայաններ, Արեգակն. համակարգի մոլորակների, Արեգակի, գիսավորների և այլ տիեզ. օբյեկտների հետազոտման համար՝ տիեզ. սարքեր: Արձակվել են կիրառ. բնույթի զգալի թվով ԵԱԱ–ներ (օր.՝ կապի ու հեռուստատեսության հաղորդումների, վթար. վիճակներում հայտնված ինքնաթիռների և նավերի կոորդինատների որոշման համար): Ուսումնասիրվում են Երկրի բնական պաշարները, կատարվում քարտեզագրման աշխ–ներ, հետազոտվում են մթն. երևույթները: S–յան բնագավառում լայնորեն զարգանում է միջազգ. համագործակցությունը:

ՏԻԵԶԵՐԱԾՆՈՒԹՅՈՒՆ, **կոսմոգոնիա,** աստղագիտ–յան բաժին. ուսումնասիրում է տիեզ. մարմինների և նրանց համակարգերի (մոլորակներ և *Արեգակնային համակարգն* ամբողջությամբ, աստղեր, գալակտիկաներ ևն) ծագումն ու զարգացումը: Առավել զարգացած են Արեգակն. համակարգի (մոլորակ.) S. և աստղ. S.: XX դ–ի 2–րդ կեսին մոլորակ. S–ում հաստատվել է միասնական սառը պտտվող գազափոշու ամպից Արեգակի և մոլորակների առաջացման վարկածը:

ՏԻԵԶԵՐԱԿԱԼ, Հայոց Բագրատունի թագավորների տիտղոսներից: S. տիտղոսն առաջինը շնորհվել է *Սմբատ Ա*–ին (890–914), երբ նրա գերիշխանության տակ են անցել Վիրքն ու Աղվանքը: S. տիտղոսը կրել են Բագրատունի հաջորդ բոլոր թագավորները և հատկապես *Սմբատ Բ*–ն (977–990), որն աղբյուրներում հայտնի է «Սմբատ Բ Տիեզերակալ» անունով:

ՏԻԵԶԵՐԱԿԱՅԱՆ, շինությունների և տեխ. միջոցների համալիր. նախատեսված է տիեզ. սարքերի հավաքման, նախապատրաստման և արձակման համար: Ներառում է տեխ. տեղադիրքը, մեկնարկ. համալիրը և սպասարկման օբյեկտները (հրամանատարաչափող. համալիրի չափման կայանները, հաշվող. կենտրոնը, վառելանյութի պահեստարանը. սարքավորումներ, հեղուկ թթվածնի և ջրածնի արտադր–յունը ևն): Տիեզ. սարքերն արձակում են Բայկանուր (Ղազախստան), Կապուստին Յար, Պլեսեցկ, Վոստոչնի (ՌԴ), Արևելյան փորձարկման կայան (Կանավերալ), Արևմտյան փորձարկման կայան (Ուոլոպս, ԱՄՆ), Կուրու (Ֆրանսիա), Սան Մարկո (Իտալիա), Ուտինոորա, Տանեհասիմա (Ճապոնիա), Չանչենգզե (ՉԺՀ), Շրիհարիկոտա (Հնդկաստան) և այլ S–ներից:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ, տիեզ. օբյեկտների շարժմանը բնորոշ նվազագույն (**կրիտիկական**) արագությունները՝ երկն. մարմինների և նրանց համակարգերի գրավիտացիոն դաշտերում: **1–ին տիեզերական արագություն**, այն նվազն v_1 արագությունը, որին հասնելու դեպքում $M \gg m$ զանգվածով երկն. մարմնի (օր.՝ Երկրի) դաշտում գտնվող m զանգվածով մարմինը (օր.՝ տիեզերանավը) կարող է դառնալ նրա՝ շրջ. ուղեծրով պտտվող արբանյակը: Երկրի մակերևույթի շուրջը պտտվող ԵԱԱ–ի համար $V_1 = 7{,}9$ *կմ/վ*: **2–րդ տիեզերական արագություն (պարաբոլական արագություն)**, այն նվազն արագությունը, որն անհրաժեշտ է հաղորդել m զանգվածով մարմնին (օր.՝ տիեզ. սարքին), որպեսզի այն կարողանա հաղթահարել $M \gg m$ զանգվածով մեկ այլ մարմնի (օր.՝ Երկրի) ձգողությունը և, շարժվելով պարաբոլ. հետագծով, ընդմիշտ հեռանա նրա ձգող. գործողության ոլորտից: Երկրի մակերևույթին 2–րդ տիեզ. արագությունը 11,32 *կմ/վ* է: **3–րդ տիեզերական արագություն**, այն նվազն արագությունը, որն անհրաժեշտ է Երկրի մակերևույթին մոտ հաղորդել մարմնին (օր.՝ տիեզ. սարքին), որպեսզի նա կարողանա հաղթահարել Երկրի և Արեգակի ձգողությունը և ընդմիշտ հեռանա Արեգակն. համակարգից: 3–րդ տիեզ. արագությունը հավասար է մոտավորապես 16,6 *կմ/վ*:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ուսումնասիրում է տիեզ. թռիչքների ազդեցությունը մարդու առողջության և աշխատունակության վրա, մշակում կենսագործունեության ապահովման ու տիեզ. սարքերի կառավարման համակարգի հանդեպ բժշկ. պահանջները, մասնագիտ. ընտրության և նախապատրաստման մեթոդներ, տիեզ. թռիչքներով պայմանավորված հիվանդությունների կանխարգելման ու բուժման միջոցառումներ:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԳԱԶԱԴԻՆԱՄԻԿԱ, *աստղաֆիզիկայի* բաժին, որը գազի (պլազմայի) շարժումը տիեզ. պայմաններում ուսումնասիրում է գազ. դինամիկայի մեթոդներով: Կիրառել են աստղերի ու Արեգակի մեջ և նրանց մթն–ներում, արեգակն., աստղ. և գալակտիկ. քամու մեջ, միջմոլորակ., միջաստղ., միջգալակտիկ. գազում, գազ. միգամածություններում շարժումների ուսումնասիրման համար:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԵՐԿՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, տիեզերքից Երկիր մոլորակի տեսող. և գործիք. ուսումնասիրությունների ամբողջությունը: Ժամանակակից տեխ. միջոցները և մեթոդները հնարավորություն են տալիս ստանալու մթն–ի ֆիզիկայի, ծովերի և օվկ–ների ջրատարածության, հող. և բուս. ծածկույթի, երկրբ. կառուցվածքի և ռելիեֆի մասին տվյալներ, որոնք կիրառվում են գիտագործն. տարբեր նպատակներով (օդերևութաբան. կանխատեսումներ, ձկնորսություն, գղտ–յուն ևն):

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ, քրիստ. եկեղեցիների հոգևորականության բարձրագույն խավի եկեղեց. ժողովներ: Դվինի եկեղեց. ժողովի (տես *Դվինի եկեղեցական ժողովներ*) որոշմամբ՝ ՀԱԵ հավատարիմ է մնացել միայն 1–ին 3 S. ժ–ի վարդապետությանը՝ դատապարտելով *Քաղկեդոնի փիեզերաժողովի* (451) որոշումները:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, միջազգ. իրավունքի ճյուղ. կարգավորում է պետությունների գործունեությունը տիեզերքում, սահմանում տիեզ. տարածության, Լուսնի և երկն. այլ մարմինների միջազգ. իրավ. ռեժիմը: S. ի–ի հիմն. աղբյուրը տիեզ. տարածության՝ ներառյալ Լուսնի և երկն. այլ մարմինների, հետազոտման ու օգտագործման ուղղությամբ պետությունների գործունեության սկզբունքների մասին պայմանագիրն է (ուժի մեջ է 1967–ից), որի համաձայն՝ տիեզ. տարածությունը, այդ թվում՝ Լուսինն ու երկն. այլ մարմիններ, բաց են բոլոր պետությունների

համար: Պայմանագիրը նախատեսում է տիեզ. տարածության մասնակի, իսկ Լուսնի և երկն. մյուս մարմինների նկատմամբ՝ լրիվ ապառազմականացում:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԿԱՊ, ռադիո- կամ օպտիկ. (լազեր.) կապ, որն իրականացվում է գետնամերձ ընդունող-հաղորդող կայանների և տիեզ. սարքերի, մի քանի վերերկր. կայանների միջև՝ հիմնականում կապի արբանյակների կամ պասսիվ վերահաղորդիչների միջոցով կամ մի քանի տիեզ. սարքերի միջև:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, հիմնականում կենսբ. գիտ-յունների համալիր. ուսումնասիրում է թռիչքների ժամանակ ցամաք. օրգանիզմների կենսագործունեությունը տիեզ. տարածության պայմաններում և տիեզ. թռչող սարքերում, մշակում տիեզերանավերում և կայաններում կենսապահովման համակարգեր: Տ. կ-յան հարցերում զգալի ներդրում ունի Նորայր *Միասյանը*:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՁԳՈՂՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ, Նյուտոնի ձգողության օրենք, իրարից r հեռ-յամբ m_1 և m_2 զանգվածներով նյութ. կետերի փոխադարձ ձգողության F ուժը հավասար է՝ $F = Gm_1 \cdot m_2/r^2$, որտեղ G-ն գրավիտացիոն հաստատունն է:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐ, բարձր էներգիայով (մոտ 1-ից մինչև 10^{21} *Է*Վ) կայուն մասնիկների հոսք, որոնք գալիս են Երկիր տիեզ. տարածությունից (առաջնային ճառագայթում), նաև մթն-ի ատոմ. միջուկների հետ այդ մասնիկների փոխազդեցությունից ծնված 2-րդային ճառագայթում, որի կազմում կան բոլոր հայտնի տարր. մասնիկները: Առաջնային տիեզ. ճառագայթումն իզոտրոպ է տարածության մեջ և անփոփոխ՝ ժամանակի ընթացքում: Նրա կազմում կան պրոտոններ (մոտ 85 %), ալֆա-մասնիկներ (մոտ 10 %) և այլ ատոմ. միջուկներ՝ ընդհուպ մինչև ամենածանրերը, նաև ոչ մեծ քանակությամբ էլեկտրոններ, պոզիտրոններ և գամմա-քվանտներ: Առաջնային Տ. ճ-ի ճնշող մասը Երկիր է գալիս գալակտիկայից (գալակտիկ. Տ. ճ.), և միայն դրանց փոքր քանակությունն է կապված Արեգակի ակտիվության հետ (արեգակն. Տ. ճ.): 10^{18} *Է*Վ-ից բարձր էներգիայով Տ. ճ. հնարավոր է, որ գալիս են *մետագալակտիկայից*: Գալակտիկ. Տ. ճ-ի ամենահնարավոր աղբյուրները *գերնոր աստղերի* բռնկումներն են և այդ ընթացքում առաջացած բարախիչները (*պուլսարներ*): Տ. ճ. գերբարձր էներգիայով մասնիկների եզակի բնական աղբյուր են, որոնք հնարավորություն են տալիս ուսումնասիրելու տարր. մասնիկների փոխազդեցության շարժընթացները և նրանց կառուցվածքը, նաև Տիեզերքի խորքերում ընթացող աստղաֆիզ. շարժընթացները:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՄԱԳՆԻՍԱՀԴՐՈՂԱԿԱՆ, *աստղաֆիզիկայի* բաժին. ուսումնասիրում է մագնիս. դաշտով հաղորդիչ հեղուկների և իոնացված գազերի (պլազմաներ) հոսքի դինամիկան տիեզ. պայմաններում: Տ. մ-ի հիմքերը դրել է Հ. *Ալֆվենը* 1950-ական թթ-ին:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՓՈՇԻ, մոտ 0,001 *մկմ*-ից մինչև 1 *մկմ* բնորոշ չափերով մասնիկներ: Հայտնաբերվել են գրեթե բոլոր աստղագիտ. օբյեկտներում՝ *Արեգակնային համակարգից* մինչև հեռավոր գալակտիկաներ և քվազարներ: Տ. փ-ու մասնիկները կազմված են հիմնականում ածխածնային նյութերից (ամորֆ ածխածին, գրաֆիտ) և մագնեզիումի երկաթային սիլիկատներից (օլիվիններ, պիրոքսեններ): Տ. փ. ցրում և կլանում է ընկնող ճառագայթումը, որը հանգեցնում է երկն. մարմինների ճառագայթման թուլացման:

ՏԻԵԶԵՐԱՔԻՄԻԱ, գիտ-յան բնագավառ. ուսումնասիրում է տիեզ. մարմինների քիմ. բաղադրությունը, Տիեզերքում տարրերի տարածվածության և բաշխման օրենքները, տարրերի իզոտոպ. բաղադրության էվոլյուցիան, տիեզ. նյութերի առաջացման ժամանակ ատոմների զուգորդումը և տեղափոխությունը: Տիեզերքում քիմ. շարժընթացների տիեզ. մարմինների բաղադրության ուսումնասիրությունը մինչև XX դ-ի 2-րդ կեսերը կատարվել է աստղերի սպեկտրներով և երկնաքարերի քիմ. վերլուծության ճանապարհով: Տիեզերագնացության զարգացումը բացել է ոչ երկր. նյութի անմիջական ուսումնասիրության նոր հնարավորություններ:

ՏԻԵԶԵՐՔ, ողջ աշխարհը, որն անսահման է տարածության ու ժամանակի մեջ և անսահմանորեն բազմաբնույթ՝ իր ձևերով: Աստղագիտ-յան հետազոտած Տ. նյութ. աշխարհի այն մասն է, որը մատչելի է հետազոտման աստղագիտ. այն միջոցներին, որոնք համապատասխանում են գիտ-յան զարգացմանը հասանելի մակարդակին: Երբեմն Տ-ի այդ մասն անվանում են *Մետագալակտիկա*:

ՏԻԵՊՈԼՈ (Tiepolo) Ջովաննի Բատտիստա (1696–1770), իտալացի գեղանկարիչ, գծանկարիչ, գրաֆիկ: Ստեղծել է դինամիկ, ազատ գեղանկարչությամբ, լույսի և օդի հագեցվածությամբ տոն. դեկորատիվ որմնանկարներ (Վենետիկի Լաբիա պալատ, 1746–47, Վյուրցբուրգի արքեպիսկոպոս. նստավայր, 1750–53, ևն), կրոն. («Մոգերի երկրպագությունը», 1753, ևն) և ժանր. նկարներ, դիմանկարներ, գծանկարներ, օֆորտներ:

ՏԻԶԲՈՆ (հուն.՝ Կտեսիփոն), ք. Տիգրիս գետի ափին (այժմյան Բաղդադի մոտ): Մ. թ. ա. III դ-ից եղել է Պարթևաստանի ռազմ. հենակետ, ապա՝ պարթևաց արքաների գահանիստը: 226-ին Տ. դարձել է *Սասանյանների* մայրաքաղաքը: 637-ին Տ. գրավել ու ավերել են արաբները: Տ-ում պահպանվել են Սասանյանների հոյակերտ պալատի ավերակները: Հիշատակվում է հայ պատմիչների երկերում՝ Հայաստանի և հայ գործիչների հետ կապված:

ՏԻԼ (Tyl) Յոզեֆ Կաետան (1808–1856), չեխ գրող, դրամատուրգ, թատեր. գործիչ: Հեղինակ է «Հրձիգի դուստրը» (1847), «Կուտնոգորցի հանքափորները» (1848), «Յան Հուս» (1849), «Դրագոմիրն ու իր որդիները» (1849) պիեսների, նաև պատմվածքների, հեքիաթ-պիեսների և ն: Չեխիայի ազգ. օրհներգի խոսքերի հեղինակը:

ՏԻԼԱԿ Բալ Գանգադհար (1856–1920), Հնդկաստանի Ազգ. կոնգրեսի ձախ թևի առաջնորդը: Անգլ. գաղութարարների դեմ բոլոր միջոցներով, այդ թվում՝ նաև բռնի ուժի կիրառմամբ, պայքարի կողմնակից: 1908-ին անգլ. դատարանը Տ-ին դատապարտել է 8 տարվա տաժանակրության: Հայտնի է նաև որպես «Ռիգվեդայի» տեքստերի ռազմափիլ. հետազոտությունների հեղինակ:

ՏԻԼՋԻՏԻ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ 1807, պայմանագրեր Ֆրանսիայի և Ռուսաստանի, Ֆրանսիայի և Պրուսիայի միջև. կնքել են Տիլզիտում (այժմ՝ ք. Սովետսկ, ՌԴ Կալինինգրադի մարզում) 1806–07-ի պատերազմում 4-րդ դաշինքի (Ռուսաստան, Պրուսիա) դեմ նապոլեոնյան Ֆրանսիայի տարած հաղթանակից հետո: Ֆրանս-ռուս. պայմանագրով Պրուսիայից վերցված լեհ. հողերից ստեղծել է Վարշավայի դքսությունը: Ռուսաստանը պարտավորվել է խզել դիվանագիտ. հարաբերություններն Անգլիայի հետ և փաստորեն միանալ Ցամաք. շրջափակմանը: Ֆրանս-պրուս. պայմանագրով՝ Պրուսիան, տարածք. զիջումներից բացի, պարտավորվել է կրճատել բանակը՝ մինչև 40 հզ. մարդ, վճարել 100 մլն ֆրանկ ռազմատուգանք և միանալ Ցամաք. շրջափակմանը:

ՏԻԼԻ (Tilly) Յոհան Յերկլաս (1559–1632), գերմանացի ֆլդմ. (1605): 1610-ից՝ Կաթոլիկ. լիգայի զորքերի, 1630-ից՝ կայսեր. բանակի գլխ. հրամ.: *Երեսնամյա պատերազմի* ընթացքում տարել է մի շարք հաղթանակներ, սակայն պարտվել է Բրեյտենֆելդեի մոտ (1631): Մահացու վիրավորվել է Լեխ գետի մոտ՝ ճակատամարտում:

ՏԻԼՎԻՏԻՍ (Tilvytis) Թեոֆիլիս (1904–1969), լիտվացի բանաստեղծ: Լիտվ. ԽՍՀ ժող. բանաստեղծ (1954): Հեղինակ է «Հոգիների վերջնավաճառք» (1928), «Դիչյուս» (1934) երգիծ. պոեմների, «Բալթիկայի քամին» (1948), «Հայրենիքի լայնարձակության մեջ» (1953) բանաստեղծությունների ժող-ների, «Լիտվական հողի վրա» («Ուսնինե», 1949, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1951), «Մաճկալներ» (մաս 1–4, 1930–65) սոցիալ. թեմաներով պոեմների ևն: Կատարել է թարգմ-յուններ:

ՏԻԽՈՄԻՐՈՎ, Միխայիլ Նիկոլաևիչ (1893–1965), ռուս պատմաբան: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1953): 1953–57-ին՝ ԽՍՀՄ ԳԱ պատմ. գիտ-յունների բաժանմունքի ակադ. քարտուղար: Աշխ-ները վերաբերում են Ռուսաստանի, Բյուզանդիայի, Սերբիայի պատմությանը, համասլավոն. խնդիրներին, աղբյուրագիտ-յանը, հնագրությանը, պատմագրությանը:

ՏԻԽՈՄԻՐՈՎ, Նիկոլայ Իվանովիչ (1859–1930), հրթիռ. տեխնիկայի բնագավառի ռուս գիտնական: Սոց. աշխ. հերոս (1991, հետմահու): Գազադինամիկ. լաբորատորիայի հիմնադիր-ղեկ-ը: Տ-ի ղեկավարությամբ ստեղծվել են ԽՍՀՄ-ում առաջին հրթիռները և անձուխ վառոդի ռեակտիվ արկերը:

ՏԻԽՈՄԻՐՈՎ, Վիկտոր Վասիլևիչ (1912–1985), ռադիոէլեկտրոնիկայի բնագավառի ռուս գիտնական: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1953): Աշխ-ները վերաբերում են տարբեր տեխ. համակարգերի կենսբ. հետազոտությունների ավտոմատացման համար սարքերի ստեղծման մեթոդների մշակմանը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1943, 1945, 1953):

ՏԻԽՈՆ (Բելավին Վասիլի Իվանովիչ, 1865–1925), Մոսկվայի և համայն Ռուսիո պատրիարք՝ 1917-ից: 1922-ին ձերբակալվել է հակախորհրդ. գործունեության մեղադրանքով: 1923-ին ազատ է արձակվել բանտից և եղել տնային կալանքում: ՌՈՒՖԵՏ-ին սրբադասել է:

ՏԻԽՈՆ ԶԱԴՈՆՍԿԻ (աշխարհիկ անունը՝ Տիմոֆեյ Սավելևիչ Սոկոլով, 1724–1783), ռուս եկեղեց. գործիչ, աստվածաբան: ՌՈՒՖԵ սուրբ: Հեղինակ է «Ճշմարիտ քրիստոնեության մասին» (1770–71),

«Աշխարհից հավաքվող հոգևոր գանձ» (1777–79) աշխ-ների: Տ. Զ-ու կյանքն ու ստեղծագործությունները մեծ ազդեցություն են թողել XIX դ-ի ռուս մշակույթի վրա (Ի. Վ. Կիրեևսկի, Ն. Ս. Լեսկով, Մ. Ֆ.Դոստոևսկի):

ՏԻԽՈՆՈՎ, Ալեքսանդր Իվանովիչ (ծ. 1947), ռուս մարզիկ (բիաթլոն): ԽՍՀՄ ս. վ. վ. (1968): Ձմեռ. օլիմպ. խաղերի (1968, 1972, 1976, 1980), աշխարհի և ԽՍՀՄ բազմակի (1969–78) չեմպիոն:

ՏԻԽՈՆՈՎ, Անդրեյ Նիկոլաևիչ (1906–1993), ռուս մաթեմատիկոս-երկրաֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (1966): Սոց. աշխ. հերոս (1953, 1986): Աշխ-ները վերաբերում են տոպոլոգիային, ֆունկցիոնալ վերլուծությանը, դիֆերենցիալ հավասարման տեսությանը, մաթ. ֆիզիկային, երկրաֆիզիկային, հաշվող. մաթ-ին:

ԽՍՀՄ Պետ. (1953, 1976), Լենինյան (1966) մրց-ներ:

ՏԻԽՈՆՈՎ, Նիկոլայ Ալեքսանդրովիչ (1905–1997), խորհրդ. պետ. և կուս. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1975, 1982): Տեխ. գիտ. դ-ր (1961): 1980–85-ին՝ ԽՍՀՄ ՆԽ նախագահ: 1979–85-ին՝ ԽՄԿԿ ԿԿ քաղբյուրոյի անդամ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1943, 1951):

ՏԻԽՈՆՈՎ, Նիկոլայ Սեմյոնովիչ (1896–1979), ռուս գրող, հաս. գործիչ: Սոց. աշխ. հերոս (1966): ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1970): Հեղինակ է «Սամի» (1920, հայ.՝ 1934), «Կիրովը մեզ հետ է» (1941) պոեմների, «Հորդա», «Բրագա» (երկուսն էլ՝ 1922) և այլ բանաստեղծությունների, «Վեց սյուն» (1968) պատմվածքների ու վիպակների, «Ընկերոջ ստվերը» (1936, ԽՍՀՄ հանրապետություններ, այդ թվում՝ ՀԽՍՀ իր բազմակի այցելությունների մասին) ժող-ների, նաև ակնարկների: Կատարել է թարգմ-յուններ (այդ թվում՝ հայ գրողների գործերից): ԽՍՀՄ Պետ. (1942, 1949, 1952), Լենինյան (1970) մրց-ներ:

ՏԻԽՈՆՈՎ, Վիկտոր Վասիլևիչ (1930–2014), ռուս մարզիկ-մարզիչ (տափօղակով հոկեյ): ԽՍՀՄ ս. վ. (1950), վ. մ. (1978): ԽՍՀՄ հոկեյի չեմպիոն (1951–54): 1977-ից՝ ԽՍՀՄ հոկեյի հավաքականի ավագ մարզիչ, 1992-ին ԱՊՀ միացյալ թիմի՝ ձմեռ. օլիմպ. խաղերի (1984, 1988, 1992) չեմպիոնների մարզիչ:

ՏԻԽՈՆՈՎ, Վյաչեսլավ Վասիլևիչ (1928–2009), ռուս. կինոդերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1974): Սոց. աշխ. հերոս (1982): Նկարահանվել է «Դեպքը եղել է Պենկովում», «Արտակարգ պատահար», «Լավատեսական ողբերգություն», «Միչման Պանին», «Պատերազմ և խաղաղություն», «Կապրենք մինչև երկուշաբթի», «Սևականջ սպիտակ Բիմը», «Սպանել վիշապին», «Արևից հոգնածները», «Գարնան տասնյոթ ակնթարթ» (հեռուստաֆիլմ) և այլ կինոնկարներում: ԽՍՀՄ Պետ. (1970), Լենինյան (1980) մրց-ներ:

ՏԻԽՈՆՐԱՎՈՎ, Միխայիլ Կլավդիևիչ (1900–1974), ռուս կոնստրուկտոր: ՌԽՖՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1970): Սոց. աշխ. հերոս (1961): Ղեկավարել է հեղուկ. հրթիռ. շարժիչով առաջին խորհրդ. հրթիռի մշակման աշխ-ները (1933), մասնակցել առաջին. ԵԱՀ-ների, տիեզերանավերի, ինքնաշխատ միջմոլորակ. կայանների ստեղծման: Լենինյան մրց. (1957):

ՏԻԽՎԻՆՍԿԻ, Սերգեյ Լեոնիդովիչ (ծ. 1918), ռուս պատմաբան: ՌԳԱ ակադ. (1981): Աշխ-ները վերաբերում են Հեռավոր Արևելքի երկրների, հիմնականում՝ Չինաստանի նոր և նորագույն պատմությանը: «Չինաստանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև XVI դ-ի սկիզբը» ակադեմ. հրտ-յան գլխ. խմբ-ը: ԽՍՀՄ (1982), ՌԴ (1999) Պետ. մրց-ներ:

ՏԻԽՈՒԱՆԱ, ք. Մեքսիկայի Ստորին Կալիֆոռնիա նահց-ում՝ ԱՄՆ-ի հետ սահմանին: Բն.՝ 1,7 մլն (2015): Ունի միջազգ. օդանավակայան: Միջպետ. սահման. առևտր. կենտրոն է:

ՏԻԿ (Tieck) Լյուդվիգ (1773–1853), գերմանացի գրող: Հեղինակ է «Պարոն Վիլյամ Լովելլի պատմությունը» (1795–96), «Ֆրանց Շտերնբալդի թափառումները» (1798) վեպերի, «Կոշկավոր կատուն», «Կապույտ մորուքը» (երկուսն էլ՝ 1797) երգիծ. չափածո հեքիաթ-պիեսների, «Շիկահեր Էկբերտը» (1797) վիպակի, Լ. Կամոենսի, Վ. Շեքսպիրի, Մ. Սերվանտեսի կյանքի մասին և պատմ. այլ վիպակների:

ՏԻԿ, անասունների (այծ, ձի ևն) ամբողջ. մորթուց պատրաստված պարկ՝ հեղուկներ (ջուր, գինի, օղի, կումիս, թան ևն) և սննդամթերք (պանիր, ժաժիկ ևն) պահելու համար: Հին Արևելքում օդով լցված տ-երով լողացել են գետերում, դրանք ամրացվել են լաստանավերին՝ բեռնատարողությունը բարձրացնելու համար: Համախ օգտագործվել են ռազմ. կամուրջներ կառուցելիս՝ որպես վերամբարձ ուժ: Օդով լցված տ. գործածվում է նաև որպես երաժշտ. հատուկ գործիքի մաս (տես *Պարկապզուկ*):

ՏԻԿԱՄԱՅՈՒ Մոնձաեմոն (1653–1725), ճապոնացի դրամատուրգ: Հեղինակ է ձյորուրի և կաբուկի թատրոնների համար գրած բազմաթիվ պիեսների, այդ թվում՝ «Հաղթական Կագեկիյոն» (1686), «Կոկսինգի ճակատամարտերը» (1715) պատմ. պիեսների, «Կրկնակի սպանություն Սոնեձակիում» (1703), «Դժոխքի սուրհանդակը» (1711) և այլ ողբերգությունների:

ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ, թատրոնի տեսակ, որտեղ գործող անձինք տիկնիկներ են: Տափակ և ծավալ. տիկնիկները հիմնականում խաղացնում են շիրմայի հետևում թաքնված դերասան-տիկնիկավարները: Ներկայացման տեսակը որոշվում է տիկնիկի ձևով և խաղացնելու եղանակով: Ստվերների թատրոնի տափակ տիկնիկները խաղացվում են հատուկ շյուղերի օգնությամբ՝ հետևից լուսավորված պաստառին ցուցադրելով դրանց ստվերապատկերները: Մյուս տեսակը թելերով խաղացվող մարիոնետ. տիկնիկներն են: Ձեռնոց-տիկնիկները խաղացվում են ձեռքին հագցված:

ՏԻԿՈՅԿԻ Եվգենի Կառլովիչ (1893–1970), բելառուս կոմպոզիտոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1955): Բելառուս. օպեր. և սիմֆ. երաժշտության հիմնադիրներից: Հեղինակ է օպերաների («Միխաս Պոդգոռնի», 1939, «Ալեսյա», 1944, ևն), պոեմների («Մերկահավի երգը», 1944), սիմֆոնիաների (1927–69), սիմֆ. պոեմների, երգերի, խմբերգերի և այլ գործերի: ԲԽՍՀ Պետ. մրց. (1968):

ՏԻՄԱԿՈՎ, Վլադիմիր Դմիտրևիչ (1905–1977), ռուս. մանրէաբան: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1968) և ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1952, նախագահ՝ 1968-ից): Սոց. աշխ. հերոս (1975): Աշխ-ները վերաբերում են վարակիչ հիվանդությունների համաճարակաբանությանը և կանխարգելմանը, միկրոօրգանիզմների գենետիկային և փոփոխականությանը, բակտերիոֆագիային: ԽՍՀՄ Պետ. (1952), Լենինյան (1974) մրց-ներ:

ՏԻՄԻՐՅԱԶԵՎ, Կլիմենտ Արկադևիչ (1843–1920), ռուս բնախույզ, բույսերի ֆիզիոլոգների գիտ. դպրոցի հիմնադիրներից: Ս. Պետերբուրգի ԳԱ (1890, ՌԳԱ 1917) թղթ. անդամ:

Աշխ-ները վերաբերում են լուսասինթեզի մեխանիզմին, ագրոնոմիայի գիտ. հիմունքներին, բույսերի հետազոտման ֆիզիոլոգ. մեթոդներին, Ռուսաստանում առաջիններից է քարոզել *դարվինիզմը*: Հեղինակ է «Բույսերի կյանքը» (1878) գրքի, Չ. Դարվինի, Լ. Պաստյորի և ուր. մասին ակնարկների:

ՏԻՄՈԹԵՈՍ ԵՎ ՄԽԻԹԱՐ ՀՈՐԻՆՈՂՆԵՐ, XIII դ-ի քանդակագործող վարպետներ, խաչքար կազմողներ: Նրանց ստորագրությամբ հայտնի է կարմրավուն տուֆից մի խաչքար (1213, Գեղարդի վանքի գավթում), որի քիվին արձանագրված է՝ «Աստուած ողորմեա Տիմոթին եւ Մխիթարայ խաչիս հաւրինող: ՈԿԲ»:

ՏԻՄՈՇԵՆԿՈ Սեմյոն Կոնստանտինովիչ (1895–1970), խորհրդ. զորապետ: ԽՍՀՄ մարշալ (1940): ԽՄ հերոս (1940, 1965): Մասնակցել է ԱՀՊ-ին, Հոկտ. հեղ-յունից հետո՝ քաղաքաց. պատերազմին (1917–1922): Խորհրդա-ֆինլանդ. պատերազմում (1939–40)՝ Հս-արմ. ռազմաճակատի հրամ.: 1940–41-ին՝ ԽՍՀՄ պաշտպ-յան ժողկոմ: ԵՀՊ-ի ժամանակ եղել է Գլխ. հրամանատարության ռազմակայանի նախագահ, ապա՝ Գերագույն գլխ. հրամանատարության ռազմակայանի անդամ, պաշտպ-յան ժողկոմի տեղակալ, Արմ. (1941) և Հվ-արմ. (1941–43) ուղղությունների գլխ. հրամ., Արմ. (1941), Հվ-արմ. (1941–42), Ստալինգրադյան (1942), Հս-արմ. (1942–43) ռազմաճակատների, 1945–60-ին՝ տարբեր ԶՕ-ների հրամ.:

ՏԻՄՈՖԵԵՎ, Պյոտր Վասիլևիչ (1902–1982), էլեկտրոնիկայի բնագավառի ռուս գիտնական: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1953): Սոց. աշխ. հերոս (1982): Ստեղծել է մի շարք լուսատարրեր, էլեկտրոն. բազմապատկիչներ, լամպեր, հայտնագործել գերպատկերահաղորդիչը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1951):

ՏԻՄՈՖԵԵՎ-ՌԵՍՈՎՍԿԻ Նիկոլայ Վլադիմիրովիչ (1900–1981), ռուս կենսաբան, գենետիկ, պոպուլյացիոն և ճառագայթ. գենետիկայի հիմնադիրներից: Հետազոտությունները վերաբերում են էվոլյուցիոն գենետիկային, ֆենոգենետիկային, ճառագայթաէկոլոգիային: 1925–45-ին ղեկավարել է Բեռլինի Ուղեղի ինստ-ը: 1945–51-ին բանտարկության մեջ է եղել Բեռլինում: Արդարացվել է և 1955-ից աշխատել ԽՍՀՄ ԳԱ համակարգում: Տ-Ռ-ու գիտալուսավորչ. աշխ-ները մեծապես նպաստել են ԽՍՀՄ-ում գենետիկայի վերածննդին: Դ. Ա. Գրանինի «Զուբր» վեպի հերոսի նախատիպն է:

ՏԻՆԲԵՐԳԵՆ (Tinbergen) Յան (1903–1994), նիդեռլանդացի տնտեսագետ: Ն. *Տինբերգենի* եղբայրը: Աշխ-ները վերաբերում են տնտ. քաղ-յան տեսությանը, տնտ. ցիկլերի և տնտ. զարգացման խնդիրներին: «Օպտիմալ կարգի» տեսության (կոնվերգենցիայի տեսության տարբերակներից է) հեղինակն է: Նոբելյան մրց. (1969, Ռ. *Ֆրիշի* հետ):

ՏԻՆԲԵՐԳԵՆ Նիկոլաս (1907–1988), նիդեռլանդացի կենդանաբան և կենդանահոգեբան: Յ. *Տինբերգենի* եղբայրը:

1949–ից՝ Մեծ Բրիտանիայում: Աշակել է (Կ. *Լորենցի* հետ) կենդանիների բնազդ. վարքի և օնտո- ու ֆիլոգենեզում նրա զարգացման մասին ուսմունք: Նորելյան մրց. (1973, Կ. Լորենցի և Կ. *Ֆրիշի* հետ):

ՏԻՆԳ (Ting) Սեմյուել Չաո Չունգ (ծ. 1936), ամերիկացի չին ֆիզիկոս: ՌԴԱ արտ. անդամ (1988): Աշխ-ները վերաբերում են տարր. մասնիկների ֆիզիկային, քվանտ. էլեկտրադինամիկային, գամմա-ճառագայթման փոխազդեցությանը նյութի հետ: Հայտնաբերել է (1974, անկախ Բ. *Ռիխտերից*) նոր ծանր *մեզոն*՝ մեզոնների ընտանիքից առաջինը՝ քվարկի հմայքով: Նորելյան մրց. (1976, Բ. Ռիխտերի հետ):

ՏԻՆԴԱԼ (Tyndall) Ջոն (1820–1893), անգլիացի ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են ձայնագիտ-յանը, ջերմ. երևույթներին, դիամագնիսականությանը, պղտոր միջավայրում լույսի ցրմանը (*Տինդալի էֆեկտ*): Գրել է Մ. *Ֆարադեյի* գիտ. կենսագրությունը:

ՏԻՆԳԱԼԱՅՈՒՄ (անգլիացի ֆիզիկոս Ջ. *Տինդալի* անունով), որոշակի օբյեկտում մանրէների և նրանց սպորների ոչնչացման եղանակ: Իրականացվում է սովորաբար 100°C ջերմաստիճանի գոլորշիով կոտորակ. մշակմամբ: Տաքացման շրջանների միջև օբյեկտները պահում են սպորների ածմանը նպաստող պայմաններում: Կիրառվում է հիմնականում հեղուկների և սննդանյութերի մանրէազերծման համար, որոնք փչանում են 100°C-ից բարձր ջերմաստիճանում:

ՏԻՆԴԱԼԻ ԷՖԵԿՏ, լույսի ցրումը պղտոր միջավայրում, որի ցրող անհամասեռությունների չափերը լույսի ալիքների երկ-յան 0,1–0,2 մասի կարգի են: Կողքից դիտողին լույսի ցրվող փունջը երևում է երկնագույն կոնի տեսքով՝ մութ ֆոնի վրա (**Տինդալի կոն**): Ուսումնասիրել է Ջ. *Տինդալը* (1868): Տ. է-ի վրա են հիմնված լույսը ցրող մասնիկների չափերի և ձևի որոշման մի շարք մեթոդներ:

ՏԻՆՏՈՐԵՏՏՈ (Tintoretto, Ռոբուստի, Robusti) Յակոպո (1519–1594), իտալացի գեղանկարիչ: Ուշ Վերածննդի Վենետիկի դպրոցի առաջատար վարպետներից: Հեղինակ է հագեցած դինամիկայով, լույսի և ստվերի հակադրությամբ, կերպարների ոգեշնչվածությամբ դրամատիկ. մոնումենտալ կտավների (Վենետիկի Սկուոլա Գրանդե դի Սան Ռոկկոյի պանոների շարքը, 1575–88): Տ-ի «Ապոլլոնը և Պանը» կտավը ՀԱՊ-ում է:

ՏԻՇԿԵՎԻՉ (Tyszkiewicz) Բեատա (ծ. 1938), լեհ կինոդերասանուհի: Ճանաչվել է Ա. *Վայդայի* ֆիլմերում («Սամսոն», «Մոխիր», «Ամեն ինչ վաճառվում է»): Տ-ին բնորոշ են արտահայտիչ արտիստականությունը, ստեղծագործ. ոճավորման զգացողությունը պատմ. ֆիլմերում («Սարագոսայում հայտնաբերված ձեռագրեր», «Մարիսիան և Նապոլեոնը», «Բալզակի մեծ սերը»), գեղ. գործերի էկրանավորումներում («Տիկնիկ», «Ազնվական օջախ» ԽՍՀՄ-ում, «44-ի օգոստոսին»՝ ՌԴ-ում):

ՏԻՇԵՆԿՈ Մարատ Նիկոլաևիչ (1931–2015), ռուս. ավիակոնստրուկտոր: ՌԳԱ ակադ. (1992): Սոց. աշխ. հերոս (1982): Մ. Լ. *Միլի* անվ. ՀԿԲ-ի գլխ. կոնստրուկտոր (1970–2007): Տ-ի ղեկավարությամբ ստեղծվել են տարբեր նշանակության ուղղաթիռներ: Լենինյան մրց. (1976):

ՏԻՇԵՆԿՈ Վյաչեսլավ Եվգեննիչ (1861–1941), ռուս. քիմիկոս-օրգանիկ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1935): Աշխ-ները վերաբերում են օրգ. սինթեզին, տերպենների քիմիային: Հայտնագործել է (1906) ալդեհիդների փոխարկումն էսթերների (Տ-ի ռեակցիա): Առաջարկել է բևեկնախեժի ստացման եղանակ բևեկնայուղից:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, հետմահու):

ՏԻՋԻՆԱ Պավլո (Պավել) Գրիգորևիչ (1891–1967), ուկրաինացի բանաստեղծ: Ուկր. ԽՍՀ ԳԱ ակադ. (1929): Սոց. աշխ. հերոս (1967): 1943–48-ին՝ Ուկր. ԽՍՀ լուսավորության նախարար: Հեղինակ է «Արևային կաղնետներ» (1918), «Գութան» (1920), «Ուկրաինայից փչող քամին» (1924), «Հաղթել և ապրել» (1942), «Ծաղկիր, չքնաղ աշխարհ» (1960), «Արծաթափայլ գիշերով» (1968) և այլ ժող-ների, ուսումնասիրել է հայոց լեզուն և գրկ-ը, թարգմանել հայ բանաստեղծների գործերից: Եղել է «Սասունցի Դավիթ» էպոսի և Խ. Աբովյանի միահատորյակի ուկր. հրտ-յան խմբ-ներից և թարգմանիչներից: Գրել է բանաստեղծություններ, հոդվածներ, ակնարկներ Հայաստանի, Երևանի, հայ մշակույթի գործիչների մասին («Հայաստանի և հայ կուլտուրայի մասին», հայ.՝ 1973): Հայ. հրատարակվել են Տ-ի «Իվասիկ-Տելեսիկը» (1941) հեքիաթը, «Հատընտիր» (1950), «Իմ ժողովրդին» (1973), «Բանաստեղծություններ» (1980) և այլ ժող-ներ: ԽՍՀՄ Պետ. (1941), Ուկր. ԽՍՀ Տ. Շևչենկոյի անվ. (1962) մրց-ներ:

ՏԻՊ (կենսբ.), կենդանիների կարգաբանության տաքսոնոմ. կարգ: Տ-ի (երբեմն՝ սկզբում ենթատիպ) մեջ միավորում են ըստ ծագման մոտիկ դասերը: Օր.՝ քորդավորների Տ. ընդգրկում է երկկենցաղների, սողունների, թռչունների, կաթնասունների և այլ դասեր: Տ-երն արտացոլում են կենդանիների միևնույն ֆիլոգենետիկ. տոհմածառի հիմն. ճյուղերը: Կենդանիները բաժանում են 16 Տ-ի (տարբեր գիտնականների կարծիքով Տ-երը 13–33-ն են), որոնք միավորվում են կենդանիների թագավորությունում: Բույսերի կարգաբանության մեջ Տ-ին համապատասխանում է բաժինը:

ՏԻՍԱ (Tisza) Իշտվան (1861–1918), կոմս, Հունգարիայի վարչապետ՝ 1903–05 և 1913–17-ին: 1910-ից՝ Աշխ-ի ազգ. կուս-յան (1910–18) ղեկ-ը: Գերմանիայի հետ ռազմ. միության ամրապնդման կողմնակից: Սպանել են ապստամբ զինվորները:

ՏԻՍԱ Կալման (1830–1902), Հունգարիայի վարչապետ՝ 1875–90-ին: 1875-ից՝ Լիբերալ կուս-յան (1875–1906) ղեկ-ը: *Հաբսբուրգների* հետ միության և Գերմանիայի հետ մերձեցման քաղ-յան կողմնակից:

ՏԻՍԱ (հունգ.՝ Tisza, սերբ.՝ Tisa), գետ Արլ. Եվրոպայում, Դանուբի ամենաերկար վտակը: Երկ.՝ 966 *կմ*, ավազանը՝ 157 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 810 *մ*^{3}/*վ*: Հաճախակի են ջրհեղեղները: Նավարկելի է ստորին հոսանքում:

ՏԻՍԱՆԴՅԵ (Tissandier) Գաստոն (1843–1899), ֆրանսիացի օդագնաց: 1868-ին առաջինն է օդապարիկներով բարձրացել (1875-ին՝ 8600 *մ*) գիտ. դիտարկումներ կատարելու համար:

ՏԻՍԵԼԻՈՒՍ (Տիզելիուս, Tiselius) Առնե (1902–1971), շվեդ կենսաքիմիկոս: Կենսապոլիմերների (այդ թվում՝ արյան շիճուկի սպիտակուցների) էլեկտրոֆորեզ. և ադսորբցիոն-քրոմատագր. վերլուծության մեթոդների ստեղծողներից: Նորելյան մրց. (1948):

ՏԻՄԵՆ (Thießen) Պետեր Ադոլֆ (1899–1990), գերմանացի ֆիզքիմիկոս, առաջին խորհրդ. ատոմ. ռումբի ստեղծման մասնակիցներից: ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1966): Աշխ-ները վերաբերում են կոլոիդների քիմիային և էլեկտրաքիմիային: ԽՍՀՄ Պետ. (1951, 1956), ԳԴՀ ազգ. (1958) մրց-ներ:

ՏԻՍԵՐԱՆ (Tisserand) Ֆրանսուա (1845–1896), ֆրանսիացի աստղագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1883): Աշխ-ները վերաբերում են գիսավորների շարժման տեսությանը, Արեգակն. համակարգի կայունության հիմնախնդրին ևն: Հեղինակ է երկն. մեխանիկայի մասին քառահատոր աշխ-յան (1889–96):

ՏԻՍՈ (Tiso) Յոզեֆ (1887–1947), Սլովակիայի ֆաշիստ. կառ-յան ղեկ.՝ 1938–39-ին, Սլովակիայի Հանրապետության նախագահ՝ 1939–45-ին: 1938-ից համակենտրոնացման ճամբարներ է աքսորել տասնյակ հազարավոր սլովակյան հրեաների: Մահապատժի է ենթարկվել դատարանի վճռով:

ՏԻՍՍԵ (Tisē) Էդուարդ Կազիմիրովիչ (1897–1961), լատիշ կինոօպերատոր: ՌԽՖՍՀ (1935), Լատվ. ԽՍՀ (1947) արվ. վաստ. գործիչ: 1918–24-ին նկարահանել է Վ. Ի. Լենինին. նյութերն օգտագործվել են «Վլադիմիր Իլյիչ Լենին» վավերագր. ֆիլմում (1948): Ս. Մ. *Էյզենշտեյնի* կինոնկարների («Պոտյոմկին» զրահանավը», 1925, «Հոկտեմբեր», 1927, «Ալեքսանդր Նևսկի», 1938, «Իվան Ահեղ», 1945, 1958՝ Ա. Ն. *Մոսկվինի* հետ, ևն) օպերատորն է: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1949, 1950):

ՏԻՎ, Նիգերիայի Բենուե-նիգ-ի պաշտոն. լեզուն: Պատկանում է բենուե-կոնգոլեզյան լեզվաընտանիքի բանտոիդ ճյուղին: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՏԻՎԱ, **Տիվայի Հանրապետություն, Տուվա,** վտմ ՌԴ Սիբիրի դաշն. օկրուգում: Տարածքը՝ 168,6 հզ. *կմ*^{2}, բն.՝ 313 հզ. (2009): Վարչ. կենտրոնը՝ *Կզըլ*: Ունի 17 շրջան, 5 քաղաք, 1 քտա: 1921-ին հռչակվել է Տուվայի Ժող. Հանրապետությունը, որը 1944-ին մտել է ՌԽՖՍՀ-ի կազմի մեջ: 1944-ին վերակազմավորվել է ԻՄ-ի, 1961-ին՝ ԻՀ-ի: 1991-ից՝ ներկա անվանումով:

ՏԻՎԱՅԻՆԵՐ, թյուրք. ժողդ ՌԴ-ում, *Տիվայի* արմատ. բնակչությունը (264 հզ.): Ընդհ. թիվը՝ շուրջ 318 հզ. (2017): Ապրում են նաև Մոնղոլիայում և ՉԺՀ-ում: Լեզուն՝ *տիվ*: Հավատացյալները լամայական, շամանական են:

ՏԻՏԱՆ, *Սատուռնի* ամենամեծ և պայծառ արբանյակը: Հայտնաբերել է Բ. *Հյուգենսը* (1655): Մեծությամբ՝ *Արեգակնային համակարգի* 2-րդ (*Գանիմեդից* հետո) արբանյակն է (տրամագիծը՝ 5152 *կմ*): Ունի մթն.՝ բաղկացած մեթանի և այլ ածխաջրածինների խառնուրդներով ազոտից:

ՏԻՏԱՆ (Titanum), Ti, տարրերի պարբեր. համակարգի IV խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 22, ա. զ.՝ 47,88: Անվանումը հին-հուն. դից-յան երկրաբնակներ Titanes – տիտանների նմանությամբ: Արծաթասպիտակավուն, թեթև, դժվարահալ, ամուր, պլաստիկ մետաղ է, խտ.՝ 4,505 *գ/սմ*^{3}, $t_{հալ.}$՝ 1671°C: Քիմիապես կայուն է (TiO_2-ի պաշտպ. թաղանթի առաջացման շնորհիվ): Հիմն. միներալներն են ռուտիլը, անատազը, իլմենիտը, լեյկոկսենը, լոպարիտը: Տ. և նրա համաձուլվածքները կարևորագույն կառուցող. նյութեր են ավիա-, հրթիռա-, նավաշինության, քիմ. արդ-յան (ռեակտորներ, խողովակաշարեր, պոմպեր) մեջ:

ՏԻՏԱՆԱՏՆԵՐ, մետատիտանաթթվի՝ H_2TiO_3, և օրթոտիտանաթթվի՝ H_4TiO_4, աղերը, օր.՝ երկաթի տիտանատը՝ $FeTiO_3$, իլմենիտ միներալն է, բարիումի տիտանատը՝ $BaTiO_3$՝ կարևոր սեգնետոէլեկտրիկ:

ՏԻՏԱՆԻ ԵՐԿՕՔՍԻԴ, TiO_2, անգույն բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 1870°C, քիմիապես կայուն է: Բնության մեջ ռուտիլ, անատազ, բրուկիտ միներալներն է: Գունանյութ է լաքաներկերի, պլաստմասսաների և թղթի արտադր-յան մեջ:

ՏԻՏԱՆԻ ՀԱՄԱՁՈՒԼՎԱԾՔՆԵՐ, տիտանի հիմքով համաձուլվածքներ: Սովորաբար տիտանը լեգիրում են վանադիում, մոլիբդենի, մանգանի, քրոմի և այլ տարրերով: Որպես միկրոհավելանյութեր՝ օգտագործում են Pd և B: Ունեն բարձր ամրություն՝ –250°C–ից մինչև 300–600°C ջերմաստիճան. տիրույթում, կոռոզիակայուն է: Բնության մեջ ռուտիլ, անատազ, բրուկիտ միներալներն է: Գունանյութ է լաքաներկերի, պլաստմասսաների և թղթի արտադր-յան մեջ:

«ՏԻՏԱՆԻԿ» («Titanic»), XX դ–ի սկզբի խոշորագույն մարդատար նավը (Մեծ Բրիտանիա): Կառուցվել է 1911–ին: Ջրատարողությունը՝ ավելի քան 46300 *տ*, երկ.՝ 269 *մ*, լայն.՝ 28,2 *մ*, արագությունը՝ 22–23 հանգույց: Առաջին ուղևորության ժամանակ՝ Սաութհեմփթոնից (Մեծ Բրիտանիա) Նյու Յորք (ԱՄՆ), 1912–ի ապրիլին ջրասույզ է եղել՝ ընդհարվելով սառցասարին: Տարբեր տվյալներով՝ զոհվել է 1490–1517 մարդ (նավի վրա եղել է մոտ 2200 մարդ): «Տ.»–ի կործանումը XX դ–ի սկզբի խոշորագույն ծով. աղետներից է: 1985–ին ամերիկա–ֆրանս. համատեղ արշավախումբը հայտնաբերել է նավը Նյուֆաունդլենդ կղզուց 729 *կմ* հվ–արլ.: 1997–ին «Տ.» հետազոտելու համար օգտագործել են ռուս. «Միր–1» և «Միր–2» խորջրյա սարքերը:

ՏԻՏԱՆՆԵՐ, *Ուրանոսի* և *Նեպտունի* արբանյակները հուն. դից–յան մեջ: Պարտվել են *Զևսին* և արտաքսվել *Տարտարոս*: Հետագա առասպելներում Տ. նույնացվել են հսկաներին (գիգանտներ):

ՏԻՏԻԿԱԿԱ, (Titicaca), լիճ Կենտր. Անդեռում՝ Պերուի և Բոլիվիայի սահմանին՝ 3812 *մ* բարձր-յան վրա: Ամենախոշոր բարձրլեռն. լիճն է աշխարհում: Մակերեսը՝ 8300 *կմ*^{2}, խոր.՝ մինչև 304 *մ*: Ափերը կտրտված են, հս–արլ–ում և հվ–արմ–ում՝ զառիթափ: Տ–ի մեջ են թափվում բազմաթիվ գետեր (ամենամեծը Ռամիսն է), արտահոսում է Դեսագուադերոն (թափվում է Պոոպո լիճը): Նավարկելի է, կա ձկնորսություն: Գլխ. նվ–նգստ–ը՝ Պուներ (Պերու): Հվ–արլ. ափին և կղզիների վրա կան հին հնդկացիների Տիաուանակո մշակույթի հուշարձաններ:

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ, **անվանաթերթ**, գրքի (ձեռագիր մատյանի) առաջին էջը (կամ էջերը), որտեղ նշվում են հրտ–յան հիմն. մատենագիտ. տվյալները՝ հեղինակի անուն–ազգանունը, գրքի բնույթը, վերնագիրը և ենթավերնագիրը, հրտչ–յան անվանումը, վայրն ու տարեթիվը, նաև գիրքը հրատարակող հաստատության, մատենաշարի անվանումները, բազմահատոր հրտ–յան դեպքում՝ հատորի հերթ. համարը ևն: Տես նաև *Գրքի դիզայն*:

ՏԻՏՈ, **Բրոզ Տիտո** (Broz Tito), Իոսիպ (1892–1980), հարավսլավացի պետ. և քաղ. գործիչ, մարշալ (1943): Հարավսլավիայի ժող. (1944, 1972), Սոց. աշխ. (1950) հերոս: Հարավսլավիայի նախագահ՝ 1953–ից, ՀՍՖՀ նախագահ՝ 1971–ից (1974–ից՝ ցմահ): 1915–ին գերի է ընկել Ռուսաստանում: 1920–ի սեպտ–ին վերադարձել է հայրենիք: 1934–ին ընտրվել է Հարավսլավիայի կոմկուսի (ՀԿԿ) ԿԿ և ՀԿԿ ԿԿ քաղբյուրոյի անդամ: 1935–36–ին ապրել է Մոսկվայում, աշխատել Կոմինտերնում: 1937–ի դեկտին գլխավորել է ՀԿԿ–ն: 1940–ի հոկտ–ին ընտրվել է ՀԿԿ ԿԿ գլխ. քարտուղար: Հարավսլավիայի ժողովրդասզատագր. պատերազմի ժամանակ (1941–45) եղել է Հարավսլավիայի ժողովրդասզատագր. բանակի և պարտիզան. ջոկատների Գերագույն գլխ. հրամ.: Հարավսլավիայի կոմունիստների միության նախագահ (1966–ից, 1940–66–ին՝ գլխ. քարտուղար): ԵՀՊ–ի ավարտից հետո առաջարկել է սոցիալիզմի կառուցման սեփական մոդել, որի պատճառով խզվել են հարաբերությունները ԽՍՀՄ–ի հետ: Չմիավորման շարժման առաջնորդներից էր:

ՏԻՏՈՍ (Titus) Ֆլավիոս Վեսպասիանոս (39–81), Հռոմի կայսր՝ 79–ից (73–ից՝ գահակից)՝ *Ֆլավիոսների* հարստությունից: Հաջորդել է հորը՝ *Վեսպասիանոսին*: Հրեական պատերազմի (66–73) վերջին շրջանում ղեկավարել է հռոմ. զորքը, 70–ին գրավել և ավերել է Երուսաղեմը: Ավարտել է Կոլիզեումի կառուցումը:

ՏԻՏՈՎ Գերման Ստեպանովիչ (1935–2000), ԽՍՀՄ տիեզերագնաց օդաչու (1961): Ավիացիայի գեն–գնդ. (1988): ԽՄ հերոս (1961): Թռել է «Վոստոկ–2» տիեզերանավով (1961–ի օգոստ.):

ՏԻՏՈՎ Յուրի Եվլամպիևիչ (ծ. 1935), ռուս մարզիկ–մարզիչ (սպորտ. մարմնամարզություն): ԽՍՀՄ ս. վ. վ. (1956): ՌԴ վ. մ. (2004): Օլիմպ. խաղերի (1956, թիմային), աշխարհի (1962), Եվրոպայի (1959), ԽՍՀՄ (1958, 1961) բացարձակ չեմպիոն: Աշխարհի, Եվրոպայի և ԽՍՀՄ բազմակի (1957–62) չեմպիոն (առանձին ձևերի վարժություններում): Մարմնամարզության միջազգ. ֆեդերացիայի նախագահ (1976–96):

ՏԻՏՈՎ Վիկտոր Աբրոսիմովիչ (1939–2000), ռուս. կինոռեժ.: 1968–ից՝ Սոսֆիլմի ռեժ. («Բժիշկ Կալինինիկովայի յուրաքանչյուր օրը», 1974, «Անեկդոտներ», 1990, «Արևելյան սիրավեպ», 1993, հեռուստաֆիլմ, «Իլֆը և Պետրովը գնում էին տրամվայով», 1972, «Բարև ձեզ, ես ձեր մորաքույրն եմ», 1975, «Բաց գիրք», 9 սերիա, 1980, «Կլիմ Սամգինի կյանքը», 14 սերիա, 1988, «Երեխան», 1992):

ՏԻՏՈՎ Վլադիմիր Գեորգիևիչ (ծ. 1947), ռուս. տիեզերագնաց օդաչու, գնդ. (1983): ԽՄ հերոս (1988): Կատարել է 4 տիեզ. թռիչք (1983, 1987–88, 1995, 1997)՝ որպես տիեզերանավի հրամ. և մասնագետ (ընդհ. տևողությունը՝ 387 օր 48 *ր*): 4 անգամ դուրս է եկել բաց տիեզերք (2–րդ թռիչքի ժամանակ՝ 3 անգամ)՝ 18 *ժ* 48 *ր* ընդհ. տևողությամբ:

ՏԻՏՈՎ Վլադիսլավ Անդրեևիչ (1934–1987), ռուս գրող: Հեղինակ է «Ի հեճուկս բոլոր մահերի...» (1967) ինքնակենսագր., «Բաժանագիծ» (1973) վիպակների, «Շոգենավորդները» (1983) վեպի, նաև պատմվածքների ևն:

Ուկր. ԽՍՀ Տ. Շևչենկոյի անվ. Պետ. մրց. (1981), «Պատվո նշան» շքանշան (1967):

ՏԻՏՐԱՉԱՓԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, քանակ. քիմ. վերլուծության եղանակների համախումբ, չափվում է հայտնի կոնցենտրացիայով ռեագենտի ծավալը, որը փոխազդում է տրված քանակով (ծավալով) հետազոտվող նյութի հետ: Տ. վ–յան համար օգտագործում են չեզոքացման, օքսիդավերականգնման, նստվածքագոյացման, կոմպլեքսագոյացման ռեակցիաներ: Տ. վ. կատարվում է տիտրումով, որի ավարտը որոշվում է քիմ. ինդիկատորներով կամ հետազոտվող լուծույթի ֆիզ. որևէ բնութագրի (էլեկտրահաղորդականություն, օպտիկ. խտություն) կտրուկ փոփոխմամբ:

ՏԻՐ, դպրության, պերճախոսության, գիտությունների ու արվ–ների աստվածը հայկ. դից–յան մեջ: Արամազդի ատենադպիրն ու սուրհանդակը: Տ. գուշակել է մարդկանց ճակատագրերն ու մեկնել երազները, ինչպես նաև գրանցել նրանց չար ու բարի գործերը, ննջեցյալների հոգիներին ուղեկցել անդրշիրիմյան աշխարհ: Տ–ի անունից Տրի է կոչվել հայոց հին տոմարի 4–րդ ամիսը: Հելլենիստ. դարաշրջանում հայերը Տ–ին նույնացրել են *Ապոլոնին* և *Հերմեսին*:

ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ (Տեր–Հովհաննիսյան–Մելիք–Մուշկամբարյան Տիգրան, 1867–1956), բանասեր, ձեռագրագետ, թարգմանիչ, հոգևոր գործիչ: 1890–ից՝ Էջմիածնի միաբանության անդամ, ծ. վրդ. (1916), եպս. (1917): 1915–21–ին՝ Սայր աթոռի դիվանապետ, 1916–18–ին՝ *«Ազարափ»* ամսագրի խմբ., 1921–28–ին՝ Հս. Ամերիկայի հայոց հոգևոր առաջնորդ: Կազմել է Օքսֆորդի Բոդլեյան, Մանչեստրի Ջ. Ռայնոլդս, Բրյուսելի արքուն. գրատների հայ. ձեռագրացուցակները (երեքն էլ՝ անտիպ. պահվում են Մտնդ–ում), հայտնաբերել է Ֆրիկի ստեղծագործությունները և հրտ–յան պատրաստել դրանց գիտաքննն. բնագրերը՝ ընդարձակ ուսումնասիրությամբ ու հավելվածներով (1914–18, Ռուսաստանի ակադ–ի մրց., հրտ.՝ 1952՝ «Ֆրիկ. Դիւան»): Թարգմանել է Ա. Կ. Դոյլի, Ջ. Բայրոնի, Հ. Իբսենի, Վ. Հյուգոյի և ուր. ստեղծագործություններից. Տ. Վ–ի բազմաթիվ գործեր անտիպ են. բնագրերի մի մասը պահվում է ԳԱԹ–ում:

ՏԻՐԱՆ (ծ. թ. անհտ–մոտ 358), Հայոց թագավոր՝ 338–350–ին: Վարել է պետ. իշխանության կենտրոնացման քաղ–յուն: 345–ի պարսկա–հռոմ. պատերազմի ժամանակ Տ. դաշնակցել է հռոմեացիների հետ: 350–ին Շապուհ II–ը ներխուժել է Հայաստան, խարդախությամբ ձերբակալել և կուրացրել է Տ–ին, ապա բանտարկել Տիզբոնում: Կարճ ժամանակ անց ազատվել է, սակայն կուրության պատճառով անկարող է եղել ղեկավարելու երկիրը:

ՏԻՐԱՆ ՀԱՅԿԱԶՆ, **Տիրանիոն**, մ. թ. ա. I դ–ի հայազգի հռոմեացի հռետոր, քերական, աշխարհագետ: Դասավանդել է Պերգամոնի դպրոցում, որտեղ հռետորություն և քերականություն է ուսուցանել *Մտրաբոնին*: Տ. Հ. իր «Առոգանության մասին» երկում քննարկել է գրականագիտ., քերական., երաժշտ., հռետոր., գեղագիտ. և այլ հարցեր: Այդ երկը (հավանաբար նաև այլ երկեր) չի պահպանվել:

ՏԻՐԱՆԱ, (Tirana), Ալբանիայի մայրաքաղաքը (1920–ից) և համանուն ռետի վարչ. կենտրոնը: Բն.՝ 570 հզ. (2010): Ունի օդանավակայան: Երկրի խոշորագույն տնտ. և մշակութ. կենտրոնն է: Հիմնադրվել է XVII դ–ում՝ XV դ–ից հայտնի բնակավայրի տեղում:

ՏԻՐԱՍՊՈԼ, (Tiraspol), ք. Մոլդովայում, չճանաչված Մերձդնեստրյան Հանրապետության մայրաքաղաքը Դնեստրի ձախ

ափին: Բն.՝ 148,9 հզ. (2010): Հիմնադրվել է 1792–ին Հին Սուկկեյա մոլդ. բնակավայրի տեղում: 1929–40–ին՝ Մոլդ. ԻԽՍՀ–ի մայրաքաղաքը:

ՏԻՐԱՏՈՒՐ, XVII դ–ի ճարտ.: 1648–ին վերաշինել է երկրաշարժից ավերված Վարագավանքի շենքերը, Սբ Սոփիա, Սբ Հովհաննես, Սբ Աստվածածին (XI դ.) և Սբ Նշան (XI դ.) եկեղեցիները, գլխ.՝ Սբ Աստվածածին եկեղեցուն կից կառուցել է քառակուսի հատակագծով, 4 սյունով կենտրոնակազմ գավիթը (XIX դ–ում՝ Սբ Գևորգ եկեղեցի):

ՏԻՐԱՏՈՒՐ ԿԻԼԻԿԵՑԻ, XIV դ–ի բարձրաստիճան պետ, մանկավարժ, գրիչ, մանրանկարիչ: *Եապայի Նչեցու* մահից հետո գլխավորել է *Գլաձորի համալսարանը*, ապա՝ Վայոց ձորի Հերմոնի վանքի բարձրագույն դպրոցը: Առաջին անգամ հիշատակվում է 1309–ին իր ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում (Մոնդ., ձեռ. № 3393), վերջին անգամ՝ 1349–ին՝ Հերմոնի վանքում գրված մի ձեռագրի հիշատակարանում: 1309–ի Ավետարանի նկարազարդումն աղերսներ ունի Սոմիկի և Թորոս Տարոնացու մանրանկարչ. արվ–ի հետ:

ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆ Կարապետ Թադևոսի (1911–1975), նկարիչ: ՀԽՍՀ ժող. նկարիչ (1967): Նկարազարդել և ձևավորել է բազմաթիվ գր. երկեր (Սիմսես Խորենացի, Խ. Աբովյան, Դ. Վարուժան, Օմար Խայամ և ուր.): Հեղինակ է դիմանկարների շարքի («Կոմիտաս», «Հ. Կոջոյան», «Պ. Սևակ» ևն, 1965–75), բնանկարների, պլակատների, թատեր. ձևավորումների: Տ–ի «Հայոց գիրը» (1963) գիրք–ալբոմն ընդգրկում է շուրջ 400 տառատեսակ և տառանմուշ, գրքի ձևավորումներ, նկարազարդումներ:

ՏԻՐԱՑՅԱՆ Արտաշես Գրիգորի (1889–1974), հրապարակախոս, մանկավարժ: Տնտ. գիտ. դ–ր (1920), պատմ. գիտ. թեկնածու (1953): 1922–48–ին՝ Բուխարեստի Միասքյան–Քեսիմյան վարժարանի տնօրեն: ՀՕԿ–ի և Բուխարեստի «Հայաստանյան ճակատ» կազմ–յունների հիմնադիրներից: Համահեղինակ է հայ–գերմ. (1965) և գերմ–հայ. (1976) դպրոց. բառարանների:

ՏԻՐԱՑՅԱՆ Գևորգ Արտաշեսի (1926–1993), հնագետ–պատմաբան, արևելագետ: Պատմ. գիտ. դ–ր (1987): 1988–93–ին՝ ՀՀ ԳԱԱ հնագիտ–յան և ազգագրության ինստ–ի տնօրեն: Տ. հետազոտել է Ուրարտուի, վաղ քրիստոնեության ժամանակաշրջանի, Հայաստանի պատմության, Հայկ լ–աշխարհի, Մերձ. Արևելքի և Այսրկովկասի պատմաշրջութ. փոխառնչությունների, նաև հայկ. հելլենիզմի հարցեր:

ՏԻՐԵՆԵԱՆ ԾՈՎ (Mare Tirreno), Միջերկր. ծովի մասը՝ Ապենինյան թ–կղզու և Սիցիլիա, Սարդինիա, Կորսիկա կղզիների միջև: Նեղուցներով հաղորդակցվում է Միջերկր. ծովի մյուս մասերի հետ: Խոր. կենտր. մասում՝ մինչև 3719 *մ*: Կա ձկնորսություն: Գլխ. նվինգստ–ները՝ Նեապոլ, Պալերմո, Կալյարի (Իտալիա), Բաստիա (Ֆրանսիա):

ՏԻՐԻԹ (Տիրիթյան Հարություն, 1884–1953), նկարիչ: Պատկերել է եգիպտ., պարսկ. իրերով, արլ. կարպետներով նատյուրմորտներ, ինքնատիպ հորինվածքներ՝ գունավոր ապակու, խեցե սկահակների, կիպրոս. հնագույն անոթների, ոսկե և այլ իրերի ներդաշնակ համադրումով («Պարսկական սենյակ», «Շահնամե», «Ֆիրդուսի», բոլորը՝ կոմպոզիցիա, ևն): Տ–ի «Նատյուրմորտ հռոմեական վազայով», «Ինտերիեր» (չին. արվ.) և այլ գործեր ՀԱՊ–ում են:

ՏԻՐՈԼ (Tirole) Ժան (ծ. 1953), ֆրանսիացի տնտեսագետ: Աշխ–ները վերաբերում են ճյուղ. կազմակերպման, խաղերի տեսության, կորպորատիվ ֆինանսների խնդիրներին: Նոբելյան մրց. (2014):

ՏԻՐՈՅԱՆ Աթանաս (Սիմոն, 1857–1926), լեզվաբան: ՎնտՄՄ անդամ (1873), քին. (1878): Հակոբ *Տիրոյանի* եղբայրը: 1883–88 և 1906–ին՝ *«Բազմավէպ»*–ի խմբ.: Հեղինակ է «Հայկական սղագրութիւն...» (1888), «Հանրագրութիւն որ է համազգային գրութեան նոր ոճ մը» (1907), «Արուեստ տաղաչափութեան» (1913) աշխ–ների:

ՏԻՐՈՅԱՆ Հակոբ (1863–1933), բնագետ, մանկավարժ, բանասեր, գրող: Աթանաս *Տիրոյանի* եղբայրը: ՎնտՄՄ անդամ (1884–ից): Հեղինակ է «Համառօտ դասագիրք ընդհանուր պատմութեան» (հ. Ա–Բ, 1897), «Ուսումն բնական եւ բնաբանական գիտութեանց» (1915) դասագրքերի, ուս. ձեռնարկների:

ՏԻՑԻԱՆ (Տիցիանո Վեչելլիո, Tiziano Vecellio, մոտ 1485/90–1576), իտալացի գեղանկարիչ: Բարձր և Ուշ Վերածննդի շրջանների Վենետիկի դպրոցի առաջնորդ: Վաղ շրջանի գործերին բնորոշ են ձևերի մոնումենտալությունը, կոմպոզիցիայի դինամիկան («Երկրային և երկնային սեր», մոտ 1515–16, «Ասսունտա», 1516–18): Դիմանկարներն առանձնանում են հոգեբ. լարվածությամբ («Պողոս III պապը Ալեսանդրո և Օտտավիո Ֆառնեզեների հետ», 1545–46, «Իպպոլիտո Ռիմինալդի», մոտ 1548), դից. տեսարանները՝ զգայականությամբ («Դանայա», մոտ 1554, «Վեներա և Ադոնիս», 1553), ուշ շրջանի ողբերգ. գործերը՝ հերոսի ընդգծված արժանապատվությամբ և ոգու ուժով («Ողբ Քրիստոսի», 1573–76): Տ–ի նկարելու ազատ եղանակը, գույների հզոր հնչողությունը մեծ ազդեցություն են թողել համաշխ. գեղանկարչության հետագա զարգացման վրա:

ՏԻՑԻՈՒՄ–ԲՈԴԵԻ ԿԱՆՈՆ, Արեգակից մոլորակների (բացառությամբ՝ Մերկուրիի՝ r = 0,4 *ա. մ.*, Նեպտունի՝ r ≈ 30 *ա. մ.*) հեռ–յան (*ա. մ*–ներով) մոտավոր որոշման էմպիրիկ բանաձև, r = 0,4 + 0,3 · 2^n, որտեղ մոլորակներին վերագրվում է հերթ. համար, n = 0 Վեներայի, n = 1՝ Երկրի, n = 2՝ Մարսի, n = 3՝ փոքր մոլորակների գոտու միջին մասի համար ևն: Կանոնն առաջարկել է գերմանացի աստղագետ Յ. Տիցիուսը (1766), և այն լայնորեն ճանաչվել է գերմանացի աստղագետ Յ. Բոդեի աշխ–ների (1772) շնորհիվ:

ՏԻՓՈՆ (Typhon), հարյուրգլխանի կրակաշունչ հրեշ հուն. դից–յան մեջ: Հերայի և Տարտարոսի որդին: Սարսռազդորում է ստորերկրյա հրաբխային ուժերին:

ՏԻՖ (հուն.՝ typhus – ծուխ, մառախուղ, գիտակցության մթագնում), որոշ վարակիչ հիվանդությունների ընդհ. անվանումը. բնորոշվում է տենդով և գիտակցության խանգարումներով (օր.՝ որովայն. Տ., բծավոր Տ.):

ՏԻՖԼՈՊԵԴԱԳՈԳԻԿԱ (< հուն. typhlos – կույր և paidagogike – մանկավարժություն), արատաբանության բաժին. մշակում է կույրերի և թույլ տեսողությամբ անձանց ուսուցման ու դաստիարակության խնդիրները:

ՏԻՖՖԱՆԻ (Tiffany) Լյունս (1848–1933), ամերիկացի նկարիչ, դիզայներ: Մոդեռնի ներկայացուցիչ: Օգտագործել է գունավոր ապակի: Հեղինակ է *վիտրաժների* (Մեխիկոյի գեղեցիկ արվ–ների պալատ, 1911), սկահակների, կանթեղների, ջահերի, ոսկերչ. իրերի:

ՏԽԼԵՆԻ (Corylus), **տկողենի, պնդուկենի**, տխիլազգիների ընտանիքի տերևաթափ թփերի, հազվադեպ՝ ծառերի ցեղ: Հայտնի է 20 տեսակ, ՀՀ–ում՝ 2՝ Տավուշի, Լոռու, Սյունիքի մարզերում: Սովոր. Տ–ու սորտերը մշակում են Արագածոտնի, Վայոց ձորի, Արմավիրի մարզերում: Ծառանման Տ. պահպանվում է:

ՏԽՈՐ Բորիս Իվանովիչ (1929–2009), ռուս. ճարտ.: ՌԽՖՍՀ վաստ. ճարտ. (1981): Հեղինակ է Պիցունդա ք–ի առևտր. կենտրոնի (1962–68), Մոնրեալի համաշխ. ցուցահանդեսի ԽՍՀՄ տաղավարի (1967), Մոսկվայի «Օլիմպիական» սպորտհամալիրի (1980, համահեղ.) նախագծերի:

Լ. Ենինյան մրց. (1982):

ՏԿԱՉՅՈՎՆԵՐ, ռուս. նկարիչ եղբայրներ: **Սերգեյ Պետրովիչ** (ծ. 1922) և **Ալեքսեյ Պետրովիչ** (ծ. 1925) Տ.: ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի անդամներ (1978): ԽՍՀՄ ժող. նկարիչներ (1983): Միասին ստեղծել են պատմ. թեմաներով գործեր («Կոիվների միջև», 1958–60, ևն), ժամանակակից ռուս. գյուղ. կյանքին վերաբերող ժանր. կտավներ («Հայրական տուն», 2003, ևն):

ԽՍՀՄ Պետ. (1978), ՌԴ Կառ–յան (2006) մրց–ներ:

ՏԿԱՉՈՒԿ Վսեվոլոդ Արսենևիչ (ծ. 1946), ռուս. կենսաքիմիկոս: ՌԲԳԱ (2000) և ՌԳԱ (2006) ակադ.: Աշխ–ները վերաբերում են ներբջջ. կենսընթացների հորմոն. կարգավորման մոլ. մեխանիզմներին, ընկալմանը և ներբջջ. ազդանշանմանը: Բացահայտել է լիպոպրոտեինների ընկալիչը (T – կադգերին): Մշակել է հորմոն. և դեղապատրաստուկների հանդեպ զգայուն հյուսվածքների գնահատման մոլ. ֆիզիոլոգ. մեթոդներ:

«ՏԿԱՉԱՐ», հնագույն փող. և հարված. ժող. գործիքների պետ. նվագախումբ: Հիմնադրվել է 1982–ին Երևանում (հիմնադիր, գեղ. ղեկ. և դիրիժոր՝ Կառլեն *Միրզոյան*): Նվագախմբում ընդգրկված են պարկապզուկ, դուդուկ, սրինգ (երբեմն՝ նաև դհոլ, քանոն և սանթուր), հանդես են գալիս նաև երգիչ–մենակատարներ: Երկացանկում՝ հայկ. ժող. մեղեդիներ, պարերգեր, ժող. և հայրենասիր. երգեր:

ՏՀԱՆ ՀՈԱ (Thanh Hóa), ք. Վիետնամի հս–ում՝ Հվ–չին. ծովի Բակբո ծոցի ափին, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 406,5 հզ. (2015):

ՏՀԱՆԵ, (Thane), ք. Հնդկաստանի Մահարաշտրա նահց–ում՝ Մումբայից հս: Բն.՝ 1,88 մլն (2011):

ՏՀԻՄՊՀՈՒ, **Թհիմպհու**, Բութանի մայրաքաղաքն Արլ. Հիմալայների միջլեռն. հովտում: Բն.՝ 93,2 հզ. (2010):

ՏՂԱԲԵՐՈՒԿ (Aethionema), **բոցաթելուկ**, կաղամբազգիների (խաչածաղկավորներ) ընտանիքի միամյա, բազմամյա խոտաբույսերի կամ կիսաթփերի ցեղ: Հայտնի է մոտ 60 տեսակ, ՀՀ–ում՝ 12 (14)՝ Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերում: Որոշ տեսակներ գեղազարդիչ են:

ՏՂՄԱՁՈՒԿ (Amia calva), **ամիա**, ոսկր. գանոիդների վերնակարգի տղմաճկների ընտանիքի միակ ժամանակակից ներկա-

յացուցիչը: Երկ.՝ մինչև 90 *սմ*: Ապրում է Հս. Ամերիկայում՝ Մեծ լճերում և նրանցից դեպի հս՝ ճահճացած ջրամբարներում: Ունակ է 1 օր ցամաքում կենդանի մնալու (լողափամփուշտի շնորհիվ):

ՏՂՄՈՒՏ, **Տղմոտ**, գետ Արաքսի ավազանում՝ նրա աջակողմյան վտակ Դեղինի (Զենգիմար) գետի համակարգում՝ Պարսկաստանի տարածքում: Ումանք այն նույնացնում են Դեղինի գետի աջակողմյան վտակ Ակչայի, ոմանք՝ Կարաբողազ գետակի, ոմանք՝ նաև Կարմիր գետի (Կզըլչայ) հետ: Տ–ի հովտում փոված է Ավարայրի փոքրիկ դաշտը՝ 3 կողմերից շրջապատված լեռներով, որտեղ տեղի է ունեցել ***Ավարայրի ճակատամարտը*** (451):

ՏՄԼԱՔՅԱՆ Պետրոս (1887–1920), ազգ–ազատագր. շարժման գործիչ: Մուսա լ–ան հերոսամարտի (1915) ղեկ–ներից: 1916–ին կռվել է ֆրանս. բանակի Հայկ. կամավոր. զորաջոկատի կազմում: Մասնակցել է ***Արարայի ճակատամարտին*** (1918): 1920–ի փետր. վերջին 150 կամավորներով կազմակերպել է Մարաշի Սբ Աստվածածին եկեղեցում ապաստանած հայերի պաշտպ–յունը, որտեղ էլ զոհվել է:

ՏՄՈՐԻՔ, ռազմ. ամրությունների համակարգ Կորճայք նհնգ–ի ***Կորդույք*** գվո–ում: Կոչվել է գլխ. ամրոցի անունով: Ստեղծվել է հնագույն ժամանակներում (մ. թ. ա. II հզ–ամյակում)՝ ընդդեմ Միջագետքից սպառնացող վտանգի: Մ. թ. ա. XIII–VII դդ–ում ասորեստանյան սեպագիր արձանագրություններում հիշատակվում է Նաիրի «երկրների» թվում՝ Տումե, Տումուրրու անվանումներով: Հնում եղել է առանձին գվո՝ համանուն կենտրոնով: Հետագայում (հավանաբար Արշակունյաց թագավորության օրոք) միացվել է Կորդույքին:

ՏՅԱՆ ՀԱՆ (1898–1968), չին դրամատուրգ, բանաստեղծ: Հեղինակ է «Վագր որսալու գիշերը» (1921), «Նշանավոր դերասանի մահը» (1930), Չինաստանի՝ 1931–ին ճապոն. բռնազավթման մասին «Լուգոու Ցյաո կամուրջը» սոցիալ–կենցաղ., «Գուան Հան Ցին» (1958) պատմ. թեմայով պիեսների: Վերամշակել է ավանդ. թատրոնի պիեսները, չին. է թարգմանել Վ. Շեքսպիրի պիեսների մեծ մասը: ՉԺՀ ազգ. օրհներգի խոսքերի հեղինակը:

ՏՅԱՆ ՇԱՆ, լեռն. համակարգ Կենտր. և Միջին Ասիայում, հիմնականում՝ Դրղըզստանում և Չինաստանում: Երկ. արմ–ից արլ.՝ շուրջ 2500 *կմ*: Բարձր գագաթները՝ Հաղթանակի պիկ (7439 *մ*), Խան Տենգրի (6995 *մ*) ևն: Կան սառցադաշտեր (ընդհ. մակերեսը՝ 7,3 հզ. *կմ*²), բազմաթիվ սահանքավոր գետեր (Նարին, Չու, Իլի ևն): Տիրապետում են լ–տափաստաններն ու կիսաանապատները, ավելի բարձր՝ մերձալպ. և ալպ. մարգագետինները:

ՏՅԱՆՅԱՔԻՆ, ք. Չինաստանի հս–արլ–ում: Բն.՝ 3,6 մլն (արվարձաններով՝ 6,4 մլն, 2010): Հարակից շրջանների հետ կազմում է ինքնուրույն վտմ՝ կենտր. ենթակայության քաղաք (բն.՝ 10,6 մլն): Խոշոր տրանսպորտ. հանգույց է Հայհե գետի և Չին. Մեծ ջրանցքի հատման վայրում՝ Դեղինի ծովի Բոհայ ծոցի ափին: Ունի օդանավակայան և մետրոպոլիտեն: Զարգացած է մեքենաշինությունը (բջջ. հեռախոսների, թվային տեսախցիկների արտադր–յուն, ավտոմեքենաշինություն, նավաշինություն ևն): Հիմնադրվել է XIII դ–ում ձկնորս. ավանի տեղում: Տ. կոչվել է 1405–ից:

ՏՅԱՊԻՆՍԿԻ (Օմելյանովիչ) Վասիլի Նիկոլաևիչ (մոտ 1540–1604), բելառուս լուսավորիչ, Ֆ. Սկորինի և Ս. Բուդնովի հումանիստ. ավանդույթների շարունակողը: Իր Տյապինո կալվածքում հիմնադրել է տպարան, բելառուս. է թարգմանել Ավետարանը և 1580–ին լույս ընծայել իր առաջաբանով:

ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋ, **Տեառնընդառաջ**, կրոնաժող. հնավանդ տոն: Սահմանել է ՀԱԵ՝ ի պատիվ Հիսուս Քրիստոսի ծննդյան քառասունքի: ՀԱԵ տերունի և անշարժ տոներից է, նշվում է Սբ ծնունդից 40 օր հետո՝ փետր. 14–ին: Խորհրդանշում է Մանուկ Հիսուսի Աստծուն ընծայումը: Երուսաղեմի եկեղեցում Սիմեոն անունով բարեպաշտ ծերունին ընդառաջ է ելնում Մանուկ Հիսուսին, զգում Փրկչի ներկայությունը (այստեղից՝ տոնի անվանումը՝ «ելանել ընդ առաջ Տեառն»): Այդ օրը եկեղեցիների ու տների բակերում, տանիքներին, փողոցներում վառում են խարույկներ, երգելով ու աղոթելով պտտվում դրանց շուրջ, նորապսակ հարսներին թոցնում վրայով (մաքրագործվելու և ծնունդը նվիրագործելու համար) ևն:

ՏՅՈՒՉԱՆՆԵՐ, XVIII–XIX դդ–ի հայկ. ամիրայական ընտանիք Կ. Պոլսում: Ընտանիքի նախահայրը՝ դերձակ **Սարգիս Հարությունի Տ.**, XVIII դ–ի սկզբին Դիվրիգից փոխադրվել է Կ. Պոլիս: Ժառանգաբար վարել են ոսկերչապետության և դրամահատության պաշտոնները: Մեծ հարստություն է կուտակել: **Միքայել Չելեբի Տ.** (1724–1783), եղել է Թուրքիայի «արքունի փողերանոցի տնօրեն», զուգընթաց զբաղվել ոսկերչությամբ, նկարչությամբ, քիմիայով: Որդին՝ **Հովհաննես Չելեբի Տ.** (1749–1812), եղել է Թուրքիայի «արքունի փողերանոցի տնօրեն»: Վերջինիս որդին՝ **Սարգիս Չելեբի Տ.** (1774–1819), եղել է Թուրքիայի արքունի գանձատան ոսկերչապետը:

ՏՅՈՒԼԵՆԵՎ Իվան Վլադիմիրովիչ (1892–1978), խորհրդ. բանակի գեն. (1940): ԽՄ հերոս (1978): Ռուսաստանում Քաղաքաց. պատերազմի ժամանակ եղել է գնդի և դիվիզիայի հրամ.: 1938–40–ին՝ Անդրկովկաս. և Մոսկովյան ՌՕ–ների հրամ.: ՀՄՊ–ի ժամանակ՝ Հվ. ռազմաճակատի, Անդրկովկաս. ՋՕ և Անդրկովկաս. ռազմաճակատի հրամ.: 1945–46–ին՝ Խարկովի ՌՕ հրամ.:

ՏՅՈՒՄԵՆ, ք. ՌԴ–ում, համանուն մարզի վարչ. կենտրոնը, նվինգստ Տուրա գետի ափին: Բն.՝ 570,3 հզ. (2009): Երկթող. հանգույց է, նավթի և գազի արդյունահանման շրջանի կենտրոնը: Միբիրի 1–ին ռուս. քաղաքն է: Հիմնադրվել է 1586–ին:

ՏՅՈՒՄԵՆԻ ՄԱՐԶ, վտմ ՌԴ Ուրալյան դաշն. օկրուգում: Տարածքը՝ 1,46 մլն *կմ*², բն.՝ 3.4 մլն (2009): Վարչ. կենտրոնը՝ ***Տյումեն***: Ունի 38 շրջան, 29 քաղաք, 34 քտա: Ներառում է Խանտի–Մանսիական և Յամալո–Նենեց. ԻՕ–ները: Կազմավորվել է 1944–ին:

ՏՅՈՒՍԱՔ Սրբուհի Սարգսի (օրիորդ. ազգանունը՝ Վահանյան, 1841–1901), գրող: Հեղինակ է «Մայտա» (1883), «Սիրանույշ» (1884), «Արաքսիա կամ Վարժուհին» (1887) վեպերի, որտեղ, ինչպես նաև 1880–82–ին Կ. Պոլսի և Զմյուռնիայի պարբ–ներում տպագրված հոդվածներում բողոքել է կնոջ անազատության դեմ, պահանջել կրթության և աշխ–ի իրավունք: Պաշտպանել է աշխարհաբարը («Աշխարհաբառ հայ լեզուն», 1880):

ՏՅՈՒՏՉԵՎ Ֆեոդոր Իվանովիչ (1803–1873), ռուս բանաստեղծ, տոհմիկ ազնվական: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1857): Հեղինակ է սիրային և հայրենասիր. բանաստեղծությունների («Դեհնիսևյան շարք», «Գարնանային ջրեր», «Անքնություն», «Աշնանային երեկո», «Մեր դարը», «Օ՜, իմաստուն իմ հոգի»), հրապարակախոս. հոդվածների («Ռուսաստանը և հեղափոխությունը», 1849, «Պապականությունը և հռոմեական հարցը», 1850): Հայ. լույս են տեսել Տ–ի «Կոշկակարը երաժիշտ» (1895), «Սպանվածի հետ մի գերեզմանոցում» (1914), «Բանաստեղծություններ» (1977) ժող–ները:

ՏՆԱՅԻՆ ԲՎԻԿ (Athene noctua), ***բվերի*** ընտանիքի թռչուն: Նստակյաց է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 21–23, թևերի բացվածքը՝ 54–58 *սմ*, կ. գ.՝ 180 *գ*: Ապրում է հիմնականում բաց տարածություններում, քաղաքամերձ վայրերում: Մվում է անողնաշարներով, մանր կաթնասուններով, թռչուններով: Օգտակար է. ոչնչացնում է կրծողներին:

ՏՆԱՅԻՆ ՃԱՆՃ (Musca domestica), իսկական ճանճերի ընտանիքի կարճաբեղիկ երկթևանի միջատ: ՀՀ–ում լայնորեն տարածված է: Կնճիթը լիզող տիպի է, բեղունությունը մեծ չէ. դնում է 160–180 ձու: Տարեկան տալիս է մի քանի սերունդ: Թրթուրները բազմակեր են: Աղիք. վարակների (որովայն. տիֆ, պարատիֆեր, դիզենտերիա, տուբերկուլոզ) փոխանցողներ են:

ՏՆԱՅԻՆ ՃՆՃՂՈՒԿ (Posser domesticus), ***ճնճղուկների*** ընտանիքի թռչուն: Նստակյաց է: Մարմնի երկ.՝ 14–15, թևերի բացվածքը՝ 21–25 *սմ*, կ. գ.՝ 28–37 *գ*: Մվում է սերմերով, հատապտուղներով, միջատներով: Աշնանը կազմում են երամներ և վնասում հացահատիկի դաշտերը, խաղողի և այլ պտղատու այգիներ:

ՏՆԱՅԻՆ ՄՈՒԿ (Mus musculus), ***մկների*** ընտանիքի կրծող կաթնասուն կենդանի: ՀՀ–ում տարածված է ամենուր: Մարմնի երկ.՝ 7–11, պոչինը՝ 4–10 *սմ*: Դունչը սուր է, ականջները՝ ուղղված առաջ: Ապրում է մեծ ընտանիքներով: Ամենակեր է: Որոշ հիվանդությունների (ժանտախտ, տուլարեմիա) հարուցիչների փոխանցող է: Փորձակենդանի է (հատկապես՝ սպիտակը):

ՏՆԱՅԻՆ ՄՆԿԵՐ (Coniophoraceae), բազիդիավոր աֆիլոֆորային սնկերի ընտանիք: Հայտնի են 8 ցեղ, 50 տեսակ, ՀՀ–ում՝ 2 ցեղ, 3 տեսակ: Առավել տարածված է իսկական տնային սունկը կամ լացող սերպուլան: Աճում է ամենուրեք (բայթայված ընափայտի, հատակի փտած տախտակների վրա, տարբեր շինություններում, նկուղներում, հանքերում)՝ տարվա բոլոր ամիսներին: Վնասակար տեսակ է. առաջացնում է փտում, թաղանթանյութի ակտիվ քայքայում:

«ՏՆՏԵՍ», ժող. տնտեսագիտ–յան ամսօրյա հանդես (1886–88, Կ. Պոլիս): Տնօրեն–խմբ–ներ՝ Եղիա Տեմիրճիպաշյան, Օվրեստես Հակոբյան:

ՏՆՏԵՍԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ, **տնտեսական քարտեզներ,** արտապատկերում են որևէ տարածքի տարբեր տնտ. երևույթներն ու գործընթացները: Տարբերում են ընդհ. և ճյուղ. Տ. ք.:

«ՏՆՏԵՍԱԳԵՏ», գիտակրթ., տեղեկատվ., վերլուծ. պարբ. (1977–ից, Երևան): ՀՊՏՀ պաշտոն. հանդես:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀՀ ԳԱԱ Մ. Խ. Քոթանյանի անվան (1999–

ից), հիմնադրվել է 1955-ին՝ ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտ-յան սեկտորի հիմքի վրա: 2007-ին ինստ-ին են միացվել Տնտեսագիտ. հետազոտությունների, Գղտ. էկոնոմիկայի ԳՀ ու Կառավարման և տնտ. բարեփոխումների ինստ-ները: Գործունեության հիմն. ուղղություններն են՝ մակրոտնտ. իրավիճակի բարելավման ու ֆինանսների, տնտ-յան իրական հատվածի, ծառայությունների ոլորտի զարգացման ու սոցիալ. ժողովրդագրության և հայ. տնտ. մտքի պատմության հարցերը: Տնօրեններ՝ Ա. Մարուխյան, Արտաշես Առաքելյան, Միքայել Քոթանյան, Վլադիմիր Խոջաբեկյան, Վ. Հարությունյան (2007-ից):

ՏՆՏԵՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, 1. երկրի տնտ-յունն արտաքին ու ներքին անուղղելի վտանգներից պաշտպանելու պետության միջոցառումների ամբողջությունը: 2. Տնտ-յան վիճակ, որն ապահովում է պետության սոցիալ., քաղ. ու պաշտպ. գոյատևման ու զարգացման բավարար մակարդակ, ինարավոր արտաքին և ներքին սպառնալիքների ու ազդեցությունների նկատմամբ նրա տնտ. շահերի անխոցելիությունը: 3. Կազմ-յունից խորհրդապահ. տնտ. տեղեկության արտահոսքի, առևտր. գաղտնիության խախտման, տնտ. դիվերսիայի կանխումը:

ՏՆՏԵՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սոցիալ–տնտ. (հաս.) աշխարհագրության ճյուղ. ուսումնասիրում է հաս-յան, արտադր-յան տարածք. կազմակերպումը, երկրների և շրջանների տարածատնտ. կառուցվածքի ձևավորման առանձնահատկությունները: Կազմված է ընդհ. Տ. ա–ից, ճյուղ. Տ. ա–ից (արդ-յան, գղտ-յան, տրանսպորտի և այլ աշխարհագրություններից), տարածաշրջ. Տ. ա–ից և համաշխ. Տ. ա–ից:

ՏՆՏԵՄԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ, երկրի կամ երկրների խմբի տնտ-յան, երբեմն՝ ամբողջությամբ համաշխ. տնտ-յան համընդհ. անկումը. դրսևորվում է արտադրյան անկման, արտադր. կարողությունների թերբեռնվածության, ձեռն-ների սնանկացման, գործազրկության աճի, դրամավարկ. և արժութաֆին. ոլորտներում խախտումների և այլ ձևերով:

ՏՆՏԵՄԱԿԱՆ ՆԵՐՈՒԺ, արտադրանք թողարկելու, բեռներ փոխադրելու, բնակչությանը ծառայություններ մատուցելու, այլ հաս. պահանջմունքներ բավարարելու, տնտ. հարաբերությունների կատարելագործումն ապահովելու՝ տնտ-յան ճյուղերի համախառն կարողությունը:

ՏՆՏԵՄԱԿԱՆ ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ (ՏՓԽ), սոց. երկրների միջկառավար. տնտ. կազմ-յուն 1949–91-ին: Անդամակցել են Ալբանիան (մինչև 1961-ը), Բուլղարիան, ԳԴՀՄՀ-ն (մինչև 1990-ը), Լեհաստանը, ԽՍՀՄ-ը, Կուբան, Հունգարիան, Մոնղոլիան, Չեխոսլովակիան, Վիետնամը: Քարտուղարությունը՝ Մոսկվայում:

ՏՆՏԵՍՅԱՆ Եղիա (1834–1881), երաժիշտ-տեսաբան, մանկավարժ, տպագրիչ: «Բովանդակութիւն նուագաց Հայաստանեայց ս. եկեղեցվոյ» (1864) «տետրում» առաջին անգամ ներկայացրել է *շարականների* սկսվածքներ և հատընտիր շարականներ: Հեղինակ է նաև «Նկարագիր երգոց Հայաստանեայց ս. եկեղեցվոյ…» (1874) հոդվածների ժող–ի և այլ գրքերի: Գրառել է շարականներ (Գաբրիել *Երանյանի* հետ), Շարակնոցը (հայկ. նոտագրությամբ), կազմել նրա համառոտ «Տարերք երաժշտութեան» (հրտ.՝ 1933, 1934) ձեռնարկը, հրատարակել երգերի «Նվագք Հայկականք» պարբ–ը (1879), «Նոր երգարան հայոց» ժող–ը ևն:

ՏՇԵԲՅԱՏՈՎՄԿԻ (Trzebiatowski) Վլոձիմեժ (1906–1982), լեհ քիմիկոս, ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1976), Լեհաստանի ԳԱ ակադ. (1952, նախագահ՝ 1972–77-ին): 1967-ին հիմնադրել է Լեհաստանի ԳԱ ցածր ջերմաստիճանների և կառուցվածք. հետազոտությունների ինստ-ը (մինչև 1974-ը՝ տնօրեն): Աշխ-նեը վերաբերում են ցածր ջերմաստիճանների ֆիզիկային, մագնիսաքիմիային, գունավոր և հազվագյուտ մետաղների տեխնոլոգիային:

ՏՈ ՀՈՒՅԻ (Նգուեն Շեն, 1920–2014), վիետնամցի գրող: Հեղինակ է ազգ. փոքրամասնությունների կյանքի մասին «Արևմտյան երկրամաս» (1966) վեպի, «Հոանգ Վան Տհուի պատանեկությունը» (1971), «Կորուսյալ կղզին» (1976) պատմավեպերի, նաև պատմվածքների, մանկ. գրքերի:

Հո Շի Մինի անվ. Պետ. մրց. (1996):

ՏՈԲԱԳՈ (Tobago), կղզի Ատլանտ. օվկում՝ Տրինիդադ և Տոբակո պետության կազմում: Տարածքը՝ 300 *կմ²*, բն.՝ 60,8 հզ. (2011): Հայտնագործել է Ք. *Կոլումբուսը* 1498-ին:

ՏՈԳՈ (Togo), **Տոգոլեզյան Հանրապետություն** (République Togolaise), պետություն Արմ. Աֆրիկայում: Սահմանակից է Բուրկինա Ֆասոյին, Գանային և Բենինին: Տարածքը՝ 56,6 հզ. *կմ²*, բն.՝ 6,8 մլն (2013): Մայրաքաղաքը՝ *Լոմե*: Պետ. լեզուն՝ ֆրանս.: Կառավարման ձևը՝ խորհրդարանահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Հավատացյալների մեծ մասը քրիստոնյա է (կաթոլիկ և բողոքական), կան նաև ավանդ. հավատալիքների հետևորդներ ու մահմեդականներ: Բաժանված է 5 վարչ. մարզերի: Անդամակցում է ՄԱԿ-ին, Աֆրիկ. միությանը ևն: Աշխարհի աղքատ երկրներից է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 1,4 հզ. ԱՄՆ դոլար է (2013): Արտահանում է գյուղմթերք, ֆոսֆատներ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, դեղեր, սննդամթերք, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ աֆրիկ. ֆրանկ:

Տ-ում ապրող ժողդ-ներից շատերը (էվե, յորուբա ևն) այստեղ են տեղափոխվել միջին դարերում հարևան տարածքներից, որոնք ներկայում պատկանում են Գանային և Բենինին: XV դ-ում Տ. են թափանցել պորտուգալացիներ, որոնք Ամերիկա են արտահանել մեծ քանակությամբ ստրուկներ: Մինչև XIX դ–ի 2-րդ կեսը Տ-ում ձևավորվել են ավատ. խոշոր պետ. միավորումներ (էվե, կոտոկոլի, չոկոսի ցեղերի)՝ ուժեղ կենտրոնացված իշխանությամբ: XIX դ–ի վերջին Տ. գաղութացրել է Գերմանիան: ԱՀՊ-ում Գերմանիայի պարտությունից հետո Տ–ի արմ. մասը դարձել է Մեծ Բրիտանիայի, արլ. մասը՝ Ֆրանսիայի ենթամանդատ. տարածք: ԵՀՊ-ից հետո Ֆրանս. Տ-ում ծավալվել է անկախության շարժում, որը ղեկավարել է Տ–ի միասնության կոմիտեն (1945-ին ձևավորվել է իբրև քաղ. կուս-յուն): Ազատագր. շարժման վերելքը Ֆրանսիայի կառ-յանը ստիպել է 1956-ին Տ-ին տալ ներքին ինքնավարություն (Ֆրանս. Տ. հռչակվել է ԻՀ, Անգլ. Տ. 1956-ի հանրաքվեով միացվել է Ոսկե Ափ անգլ. գաղութին, որը 1957-ին հռչակվել է անկախ պետություն՝ Գանա): 1960-ին Տ. հռչակվել է անկախ պետություն: 1967-ին տեղի է ունեցել ռազմ. հեղաշրջում, իշխանությունն անցել է զինված ուժերի շտաբի պետ Գ. Է. Էյադեմայինը, որը ցրել է բոլոր կուս-յունները, ապա 1969-ին ստեղծել է Տ–ի ժողդ–ի միավորում կուս-յունը: 1972-ի հանրաքվեն օրինականացրել է Էյադեմայի՝ պետության ղեկ-ի իրավունքները: 1980-ին ընդունվել է նոր սահմանադրություն: Էյադեմայի մահից հետո, 2005-ին զինվորականների աջակցությամբ երկրի նախագահ է դարձել որդին՝ Ֆ. Է. Գնասինգբեն:

ՏՈԴԴ (Todd) Ալեքսանդեր (1907–1997), անգլիացի քիմիկոս–օրգանիկ: Լոնդոնի թագավոր. ընկ-յան անդամ (1942, նախագահ՝ 1975–80-ին), ՌԳԱ արտ. անդամ (1982): Աշխ-ները վերաբերում են նուկլեոտիդների և նուկլեինաթթուների ուսումնասիրությանը:

Նոբելյան մրց. (1957), Դեվի (1949), Թագավոր. (1955), Կոպլի (1970), Մ. Վ. Լոմոնոսովի անվ. Մեծ ոսկե (1978) մեդալներ:

ՏՈԴՈՐՈՎՍԿԻ Պյոտր Եֆիմովիչ (1925–2013), ռուս. կինոօպերատոր, կինոռեժ.: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1985): Վ. Պ. *Տոդորովսկու* հայրը: Նկարահանել է «Գարունը Զարեչնայա փողոցում» (1966, Ռ. Բ. Վասիլևսկու հետ) ևն: «Հավատարմություն» (1965), «Աճպարարը» (1968), «Վերջին զոհը» (1976), «Մեխանիկ Գավրիլովի սիրելի կինը» (1982), «Ռազմադաշտային սիրավեպ» (1984), «Ինչ զարմանահրաշ խաղ է» (1995) և այլ ֆիլմերի ռեժ-ն է: ՌԴ Պետ. մրց. (1995):

ՏՈԴՈՐՈՎՄԿԻ Վալերի Պետրովիչ (ծ. 1962), ռուս. կինոռեժ., սցենարիստ: Պ. Ե. *Տոդորովսկու* որդին: Հեղինակ է «Նմանակը» (1987), «Անպատկառներ» (1991) և այլ ֆիլմերի սցենարների: Նկարահանել է «Դիակառք» (1990), «Սեր» (1992), «Մոսկովյան երեկոներ» (1994), «Խուլերի երկիրը» (1998), «Սիրեկանը» (2002), «Ստիլյագներ» (2008) և այլ ֆիլմեր:

ՏՈԴՈՐՄԿԻ Ալեքսանդր Իվանովիչ (1894–1965), խորհրդ. բանակի գեն–լեյտ. (1955): Ռուսաստանում քաղաքաց. պատերազմի (1918–22) ժամանակ եղել է գնդի և դիվիզիայի հրամ.: 1930-ական թթ–ին՝ Ն. Ե. Ժուկովսկու անվ. ռազմաօդ. ակադ–ի պետ:

ՏՈԼԲՈՒԿՅԱՆ (Դոլբական) Եղիա Հովհաննեսի (1908–1982), հրտ., խմբ., թարգմանիչ: 1926-ից՝ ուսուցիչ և տնօրեն Բեյրութի Նուբարյան, Աբգարյան, Սահակյան, Սահակ Մեսրոպյան վարժարաններում, 1938-ին՝ «Լուսարձակ» տպարանի և հրտչ-յան հիմնադիր-տնօրեն, 1937–43-ին՝ *«Ամէնուն նոր տարեցոյց»*-ի խմբ.: 1946-ին հայրենադարձել է: Ֆրանս–ից թարգմանել է Կ. Բերժեի, Ժ–Ժ. Ռուսոյի, Պ. Սալի, Օ. դը Բալզակի գործերից:

ՏՈԼԲՈՒԽԻՆ Ֆեոդոր Իվանովիչ (1894–1949), խորհրդ. զորապետ: ԽՍՀՄ մարշալ (1944): ԽՄ հերոս (1965, հետմահու): ՀՄՊ-ի ժամանակ՝ տարբեր ռազմաճակատների շտաբի պետ, բանակների հրամ.: 1945-ի հուլիսից՝ զորքերի Հվ. խմբավորման, 1947-ի հունվ–ից՝ Անդրկովկաս. ՋՕ զորքերի հրամ.:

ՏՈԼԵԴՈ (Toledo), ք. Իսպանիայում՝ Տախո գետի ափին, Կաստիլիա Լա–Մանչա ԻՄ–ի և համանուն պրովինցիայի վարչ.

կենտրոնը: Բն.՝ 83,5 հզ. (2015): Գործում է *Էլ Գրեկոյի* տուն-թանգարանը: VI–VIII դդ-ում եղել է վեստգոթերի պետության մայրաքաղաքը, XI դ-ում էմիրության կենտրոն էր, 1085-ից՝ Կաստիլիայի և Լեոնի, 1479–1561-ին՝ միացյալ Իսպանիայի մայրաքաղաքը: Կան միջնադար. ճարտ. բազմաթիվ հուշարձաններ: Հռչակվել է ք-թանգարան: Պատմ. կենտրոնը Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՏՈԼԵՐԱՆՏՈՒԹՅՈՒՆ (լատ.՝ tolerantia – համբերություն), **հանդուրժողականություն**, 1. օրգանիզմի իմունաբան. վիճակ, երբ օրգանիզմ ներմուծած որոշակի հակածնի հանդեպ այն հակամարմին չի սինթեզում՝ այլ հակածինների հանդեպ հակազդեցության պահպանման պայմաններում: 2. Միջավայրի այս կամ այն գործոնի անբարենպաստ ազդեցությունը հանդուրժելու օրգանիզմի ունակությունը: 3. Հաս. S., սահմանված կանոնակարգից շեղված անձանց, սոցիալ. խմբերի կարծիքների նկատմամբ հանդուրժողականությունը: S-ում՝ նրա օբյեկտի հանդեպ դատապարտման տարրը (որով S. տարբերվում է անտարբերությունից) ստեղծում է, այսպես կոչված, S-յան պարադոքս՝ թույլատրել այն, ինչ անթույլատրելի է: S. քաղաքաց. հաս-յան հիմն. բարոյական սկզբունքներից է: Ընդ որում՝ գոյություն ունի S-յան սահման, որից այն կողմ թույլատրելիության տարրը դադարում է գերակշռել դատապարտման տարրին (օր.՝ ոտնձգությունը մարդու ազատության և բարոյական արժանապատվության հանդեպ):

ՏՈԼԻԴՈ (Toledo), ք. ԱՄՆ-ի Օհայո նահանգում՝ Էրի լճի ափին: Բն.՝ 288 հզ., ագլոմերացիայում՝ շուրջ 600 հզ. (2010): Արև. էներգիայի օգտագործման փորձարարա-նախագծ. աշխ-ների կենտրոն է:

ՏՈԼՄԱ, *դոլմա*, ուտեստ: Պատրաստում են հիմնականում ծեծած, մանր կտրատած կամ աղացած մսի, ցորենի ձավարի կամ բրնձի, ինչպես նաև զանազան հումնոնքների (աղ, պղպեղ, սոխ, գինձ, դաղձ, ուրց, ռեհան ևն) խառնուրդը խաղողի տերևների կամ կաղամբի խաշած թփերի մեջ փաթաթելով ու մարմանդ կրակով եփելով:

ՏՈԼՄԱՉՅԱՆ (Տոլմաջև) Գրիգոր Միհրանի (1905–1958), ԽՍՀՄ ավիացիայի գեն-մայոր (1943): 1938-ին՝ Հեռավորարվ. ՌՕՈՒ փոխհրամ., այդ պաշտոնում 1945-ին մասնակցել է Ճապոնիայի դեմ պատերազմին: ԽՍՀՄ Կարմիր դրոշի (2), Մ. Ի. Կուտուզովի 2-րդ աստիճանի, Կարմիր աստղի շքանշաններ:

ՏՈԼՅԱՏԻ (Togliatti) Պալմիրո (1893–1964), Իտալիայի կոմկուսի (ԻԿԿ) հիմնադիր-գլխ. քարտուղար՝ 1926-ից: 1940–44-ին բնակվել է ԽՍՀՄ-ում: 1944–46-ին Իտալիայի կառ-յան անդամ՝ անպորտֆել նախարար, ապա՝ արդարադատության նախարար և փոխվարչապետ: 1944-ից՝ ԻԿԿ «Ռինաշիտա» («Rinascita») ամսագրի տնօրեն: 1948-ից՝ խորհրդարան. խմբակցության նախագահ: Հեղինակ է բանվ. շարժման տեսությանը և պրակտիկային, Իտալիայի պատմությանը նվիրված աշխ-ների: ՌԴ-ում S-ի անունով կոչվել է քաղաք (1964-ից):

ՏՈԼՅԱՏԻ (մինչև 1964-ը՝ Ստավրոպոլ), ք. ՌԴ Սամարայի մարզում, նվինգստ Վոլգայի ափին: Բն.՝ 720,3 հզ. (2009): Երկթղ. հանգույց է: Հայտնի է «Ավտովազ»-ի գլխ. գործարանով: Հիմնադրվել է 1737-ին՝ որպես ամրոց: Կոչվել է Պ. *Տոլյատիի* անունով:

ՏՈԼՈՐՍԻ ՋՐԱՄԲԱՐ, ՀՀ Սյունիքի մարզում՝ Սիսիան և Այրի գետերի միացման տեղում՝ Սիսիան ք-ից 3 *կմ* հվ՝ մոտ 1650 *մ* բարձր-յան վրա: Շահագործվում է 1976-ից: Որոտանի ջրաէներգետիկ կասկադի հիմն. կարգավորող ջրամբարներից է: Մտում է Շամբի և Տաթևի ջրէկները: Երկ.՝ 4,5 *կմ*, մակերեսը՝ 4,7 *կմ*^{2}, միջին խոր.՝ 32 (առլճ՝ 56,5) *մ*, ջրատարողությունը՝ 96,8 մլն *մ*^{3}, օգտ.՝ 80 մլն *մ*^{3}: Ձրերն օգտագործվում են էներգետիկ և ոռոգման (մոտ 3 մլն *մ*^{3}) նպատակներով:

ՏՈԼՍԿԻ Նիկոլայ Ալեքսեևիչ (1832–1891), Ռուսաստանում մանկաբուժության հիմնադիրներից, գիտ. դպրոցի կազմակերպիչ: Նրա նախաձեռնությամբ Մոսկվայի համալսարանին կից ստեղծվել է (1866) առաջին մանկ. կլինիկան:

ՏՈԼՍՏԱՅԱ Տատյանա Նիկիտիչնա (ծ. 1951), ռուս գրող: Ա. Ն. *Տոլստոյի* թոռնուհին: Հեղինակ է «Ոսկե սանդղամուտքին նստել էին…» (1987), «Միրում ես, չես սիրում» (1997), «Օկկերվիլ գետը» (1999), «Գիշեր» (2001), «Կանանց օրը» (2006) պատմվածքների ժող-ների, «Կիս-կիս» (2000) վեպ-հակաուտոպիայի, նաև հրապարակախոս. նյութերի:

ՏՈԼՍՏԻԿՈՎ Գեներիխ Ալեքսանդրովիչ (1933–2013), ռուս. քիմիկոս-օրգանիկ: ՌԳԱ ակադ. (1987): Բաշկիրիայի գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1975): 1977–93-ին՝ ԽՍՀՄ ԳԱ Բաշկիրիայի բաժանմունքի քիմիայի ինստ-ի, 1984–93-ին՝ Ուրալի բաժանմունքի Բաշկիրիայի գիտ. կենտրոնի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են մետաղակոմպլեքս. կատալիզին և օրգ. սինթեզին:

ԽՍՀՄ (1990) և ՌԴ (2003) Պետ. մրց-ներ:

ՏՈԼՍՏՈՅ Ալեքսեյ Կոնստանտինովիչ (1817–1875), ռուս գրող: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1873): Հեղինակ է «Իշխան Սերեբրյանին» (1862) պատմավեպի, «Իվան Ահեղի մահը» (1866), «Ցար Ֆեոդոր Իոանովիչ» (1868) և «Ցար Բորիս» (1870) դրամատիկ եռերգության, նաև բալլադների, բանաստեղծությունների, հոգեբ. չափածո նովելների («Աղմկոտ պարահանդեսի ժամանակ, պատահաբար…», «Դա պատահել է վաղ գարնանը» ևն): Ժեմչուժնիկով եղբայրների հետ ստեղծել է *Կոզմա Պրուտկով* բանաստեղծ-գրամոլի կերպարը:

ՏՈԼՍՏՈՅ Ալեքսեյ Նիկոլաևիչ (1882/83–1945), ռուս գրող: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939): Տ. Ն. *Տոլստայայի* պապը: 1918–23-ին՝ վտարանդի: Հեղինակ է «Տարօրինակ մարդիկ» (1911), «Կաղ կալվածատերը» (1912) վեպերի, «Թռչնակը» (1916) պիեսի, «Սատանան» (1916), «Խավարամուղները» (1917) կատակերգությունների, որտեղ պատկերել է ռուս ազնվականության բարոյական քայքայումն ու այլասերումը, «Նիկիտայի մանկությունը» (1922, հայ.՝ 1936) վիպակի, «Նևզորովի արկածները կամ Իբիկուս» (1924) երգիծ. վեպի, «Տառապանքի ուղիներով» եռերգության («Քույրերը», 1922, «Տասնութ թիվը», 1927–28, «Մոայլ առավոտ», 1940–41, ԽՍՀՄ Պետ. մրց.՝1943, հայ.՝ 1946–50), որի հիմքում կորցրած ու վերադարձված հայրենիքի թեման է, «Պետրոս Առաջին» (գիրք 1–3, 1929–45, անավարտ, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1941, հայ. գիրք 1, 1937) վեպ-էպոպեայի, «Իվան Ահեղ» (1942–43, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1946) դրամատիկ երկերգության, «Ալելիտա» (1922–23, հայ.՝ 1960), «Ինժեներ Գարինի հիպերբոլոիդը» (1925–27, հայ.՝ 1982) գիտաֆանտաստիկ վեպերի, մանկ. «Ոսկե բանալին կամ Բուրատինոյի արկածները» (1936, հայ.՝ 1955) հեքիաթ-վիպակի ևն:

ՏՈԼՍՏՈՅ Լև Նիկոլաևիչ (1829–1910), ռուս գրող: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1873), պատվ. ակադ. (1900): Առաջին իսկ գործերի՝ ինքնակենսագր. եռերգության մեջ («Մանկություն», 1852, «Պատանեկություն», 1852–54, «Երիտասարդություն», 1855–57) դրսևորվել են S-ի ռեալիստ. արվ-ի մի քանի էական գծեր՝ հոգեբ. վերլուծության խորություն, կեղծիքի հանդեպ անհանդուրժողականություն, դասային նախապաշարմունքներից զերծ «բնական մարդու» իդեալի հաստատում: «Պատերազմ և խաղաղություն» (1863–69, հրտ.՝ 1865-ից, հայ.՝ 1911) վեպ-էպոպեայում նկարագրել է XIX դ-ի 1-ին քառորդի համաեվրոպ. պատմության մեծ դեպքերը: «Աննա Կարենինա» (1873–77, հրտ.՝ 1876–77, հայ.՝ 1911) վեպում արծարծել է ռուս. հետռեֆորմյան կյանքի սոցիալ-տնտ. և գաղափարահոգեբ. բարդ հարցեր: Ստեղծագործության վերջին շրջանում (1880–1910) խորացել են S-ի հաս. և գեղ. մտածողության հակասությունները. մի կողմից՝ բուրժուաազնվ. պետության համաժող. էության մերկացում, պաշտոն. եկեղեցու անողոք քննադատություն, մյուս կողմից՝ համընդհ. սիրո և բարոյական կատարելագործման, «չարին բռնությամբ չդիմադրելու կրոնական նրբին քարոզ», որոնք հետագայում դարձել են «տոլստոյականություն» կոչված փիլ. հոսանքի հիմքը:

S-ին իր հայացքների համար հալածել են և՛ հեղ-դեմոկրատ գործիչները, և՛ եկեղեցին. 1901-ին Սինոդի որոշմամբ նա հեռացվել է եկեղեցուց: Հաս-յան բարոյական հիմքերի քննադատությամբ և սոցիալ-հոգեբ. բախումներով աչքի են ընկնում այդ շրջանի գործերը՝ «Իվան Իլյիչի մահը» (1884–86, հայ.՝ 1911), «Կրեյցերյան սոնատ» (1887–89, հայ.՝ 1893) վիպակները, «Խավարի իշխանություն» (1886, հայ.՝ 1950), «Լուսավորության պտուղներ» (1886–90, հրտ.՝ 1891, հայ.՝ 1936), «Կենդանի դիակ» (1900, հրտ.՝ 1911, հայ.՝ 1911) պիեսները: Ընշման և անարդարության դեմ ժող. զանգվածների մեջ կուտակված ատելությունն է արտացոլված «Հարություն» (1889–99, հայ.՝ 1901) վեպում, «Հաջի Մուրադ» (1896–1904, հրտ.՝ 1912, հայ.՝ 1914) վիպակում: Այս և այլ խնդիրների S. անդրադարձել է նաև իր հրապարակախոս. բազմաթիվ հոդվածներում («Խոստովանություն», 1879–80, «Ո՞րն է իմ հավատը», 1882–84, «Չեմ կարող լռել», 1908, «Կյանքի ուղին», 1910, ևն), գրել է նաև գրաքննադատ. հոդվածներ («Ինչ է գեղարվեստը», 1898, ևն): 1910-ի աշնանը S. գաղտնի հեռացել է տնից, սակայն Աստապովո կայարանում հիվանդացել է ու մահացել:


ՏՈԼՈՒԲԵԵՎ Անդրեյ Յուրևիչ (1945–2008), ռուս. դերասան: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1991): Յ. Վ. *Տոլուբևի* որդին: 1975-ից՝ Լենինգրադի դրամատիկ. Մեծ թատրոնի (այժմ՝ Գ. Ա. Տովստոնոգովի անվ.) դերասան (Յակով՝ Մ. Գորկու «Վերջինը», Բալզամինով՝ Ա. Ն. Օստրովսկու

«Բալզամինովի ամուսնությունը», Լ. պախին՝ Ա. Պ. Չեխովի «Բալենու այգին», Բեռնարդ՝ Տ. Ստոպպարդի «Արկադիա», ևն): Նկարահանվել է «Սպանել վիշապին», «Ադամի կողոսկրը», «Վարպետը և Մարգարիտան» (հեռուստասերիալ) և այլ ֆիլմերում:


ՏՈԼՈՒԲԵԵՎ Յուրի Վլադիմիրովիչ (1906–1979), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1956): Սոց. աշխ. հերոս (1976): Ա. Յ. *Տոլուբեևի* հայրը: 1942–ից՝ Լենինգրադի Պուշկինի անվ. դրամայի թատրոնի դերասան (Քաղաքագլուխ՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», Առաջնորդ՝ Վ. Վ. Վիշնևսկու «Լավատեսական ողբերգություն», Բուբնով՝ Մ. Գորկու «Հատակում», ևն): Նկարահանվել է կինոյում («Դոն Կիխոտ», «Համլետ» ևն): ԽՍՀՄ Պետ. (1947), Լենինյան (1958) մրց-ներ:

ՏՈԼՈՒԲԿՈ Վլադիմիր Ֆեոդորովիչ (1914–1989), խորհրդ. հրետանու գլխ. մարշալ (1983): Սոց. աշխ. հերոս (1976): 1972–85-ին՝ ԽՍՀՄ Ռազմավար. նշանակության հրթիռ. զորքերի գլխ. հրամ., պաշտպ-յան նախարարի տեղակալ:

ՏՈԼՈՒԻԴԻՆՆԵՐ, անգույն հեղուկներ են կամ պինդ նյութեր, *օրթո*-Տ. ($t_{հալ.}$՝ – 24,4°C), *մետա*-Տ. ($t_{հալ.}$՝ – 31,5°C), *պարա*-Տ. ($t_{հալ.}$՝ 44,5°C): Օգտագործվում են ներկանյութեր սինթեզելու համար: Թունավոր են:



ՏՈԼՈՒՈԼ, *մեթիլբենզոլ*, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 110,6°C: Մեծ քանակությամբ պարունակվում է քարածխ. խեժում և նավթավերամշակման արգասիքներում: Կիրառվում է պայթուցիկ նյութ (նիտրոտոլուոլ), ներկանյութեր, դեղապատրաստուկներ ստանալու, օրգ. միացություններ սինթեզելու համար և որպես լուծիչ:



ՏՈԿԱՄԱԿ [ռուս.՝ тороидальная камера с магнитными катушками (մագնիս. կոճերով տորոիդ. խցիկ) արտահայտության համառոտագրությունը], տորաձև մագնիս. թակարդի տեսակ: *Տորի* մեջ փակված պլազմայի միջով բաց են թողնում ուժեղ էլ. հոսանք, որի մագնիս. դաշտը գումարվում է տորաձև սոլենոիդի մագնիս. դաշտին, և արդյունքում առաջանում է պլազմայի հավասարակշռության և ջերմամեկուսացման համար անհրաժեշտ եզրաձևով մագնիս. դաշտ: Տ-ի գաղափարը 1950-ին առաջարկել են Ի. Ե. *Տամմը* և Ա. Դ. *Սախարովը*: Առանձին փորձեր սկսվել են (1956) Ի. Վ. *Կուրչատովի* անվ. ատոմ. էներգետիկայի ինստ-ում՝ ԿԶՄՄ-ի հետազոտությունների համար:

ՏՈԿԱՐԵՎ Ֆեոդոր Վասիլևիչ (1871–1968), ռուս կոնստրուկտոր: Սոց. աշխ. հերոս (1940): Ստեղծել է ինքնաձիգ հրացանների մի շարք նմուշներ (այդ թվում՝ ինքնալիցքավորվող ՍՎՏ, 1938), ձեռքի գնդացիր ՄՏ (1925), ինքնալիցքավորվող ատրճանակ ՏՏ (1930): ԽՍՀՄ Պետ. մրց. (1941):

ՏՈԿԱՐԵՎԱ Վիկտորյա Սամոյլովնա (ծ. 1937), ռուս գրող: Հեղինակ է «Ոչ ռոմանտիկ մարդը» (1978), «Ծեր շունը» (1979) վիպակների, «Այն մասին, ինչ չի եղել» (1969), «Երբ մի քիչ ջերմացավ» (1972), «Օրն առանց ստի» (1994), «Ձնահյուս» (1996), «Ահաբեկում սիրով» (2006) պատմվածքների ու վիպակների ժող-ների, նաև կինոսցենարների («Միմինո» ևն):

ՏՈԿԱՐՄԿԻ Նիկոլայ Միխայլովիչ (1892–1977), ճարտ-յան ռուս. պատմաբան: Արվեստագիտ. դ-ր (1962): ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1961): Հայկ. ճարտ-յան ուսումնասիրությամբ զբաղվել է 1910-ական թթ-ից (Անի, ներկայի ՀՀ Կոտայքի մարզի ճարտ. հուշարձաններ, Սևանավանք), ղեկավարել է Ավանի, Պտղնիի, Հովհաննավանքի եկեղեցիների ամրացման աշխ-ները, Զրվեժի, Ողջաբերդի հուշարձանների պեղումները: Հեղինակ է «Հին Հայաստանի ճարտարապետությունը» (1946), «Հայկական ճարտարապետության պատմության էջերով» (1973), «Տայքի իշխանության միջնադարյան շինարարության պատմության ընթացքով» (1988) և այլ աշխ-ների: ՀԽՍՀ ԳԱ Թ. Թորամանյանի անվ. մրց. (1972):

ՏՈԿԻՈ, Ճապոնիայի մայրաքաղաքը Հոնսյու կղզու Կանտո հարթավայրում՝ Տոկիոյի ծոցի ափին: Բն.՝ 13 մլն (Տոկիո նահանգապետության սահմաններում, 2010), մայրաքաղաք. ագլոմերացիայում ապրում է երկրի բնակչության շուրջ 1/3-ը (37 մլն): Խոշոր տրանսպորտ. հանգույց է, ծով. նվինգատ (բեռնաշրջանառությունը՝ շուրջ 90 մլն *տ*): Ունի օդանավակայաններ, մետրոպոլիտեն: Համաշխ. նշանակության 3 գլխ. առևտրաֆին. կենտրոններից է, երկրի գլխ. տնտ., մշակութ., կրթ. և գիտ. կենտրոնը: Զարգացած են տնտ-յան բարձրտեխնոլոգ. ճյուղերը: Կան մեքենաշին. և մետաղամշակման, թեթև, սննդի, տպագր. արդ-յան և այլ ձեռն-ներ: Գործում են բազմաթիվ թատրոններ, շուրջ 30 թանգարան (Բրիջստոն արվ-ի, Ժամանակակից արվ-ի, Տենրի պատկերասրահը ևն) և բուհեր: Հիմնադրվել է XV դ-ի կեսին: 1457-ին կառուցվել է Էդո (բառացի՝ «մուտք ծովածոց») ամրոցը, որի շուրջ ձևավորվել են արհեստավորների և առևտրականների բնակավայրեր: 1603–67-ին Տ. եղել է Տոկուգավա տան սյոգունների նստավայրը (մինչև 1868-ը Ճապոնիայի պաշտոն. մայրաքաղաքը Կիոտոն էր՝ կայսրերի նստավայրը): XVIII դ-ում Էդոն աշխարհի խոշորագույն քաղաքներից էր (1787-ին՝ 1 մլն 368 հզ. բն.): 1869-ին, սյոգունության վերացումից հետո, այստեղ է տեղափոխվել կայսեր նստավայրը, քաղաքը վերանվանվել է Տ-ի («արևելյան մայրաքաղաք»), դարձել մայրաքաղաք:

Տ-ի պատմ. կենտրոնը Նիհոմբասի շրջանն է, որտեղ պահպանվել են կայսեր. պալատի համալիրը (մոտ 1600, վերականգնվել է XIX դ-ի վերջ–XX դ-ի սկզբին), Ռիկուշեն լանդշաֆտ. զբոսայգին (XVII դ-ի վերջ–XVIII դ-ի սկիզբ), սինթոիստ. Տոսյեգու (ժամանակակից տեսքն ստացել է XVII դ-ում) և Մեյջի (XIX դ-ի վերջ), բուդդ. Կաննոն (հիմնադրվել է XVII դ-ում, վերականգնվել՝ XX դ-ում) տաճարները և ճարտ. այլ հուշարձաններ: Տ-ում են անցկացվել XVIII օլիմպ. խաղերը (1964):

ՏՈԿԻՈՅԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, պատերազմի ճապոնացի գլխ. հանցագործների դեմ միջազգ. ռազմ. դատավարություն (3 մայիս 1946–12 նոյեմբ. 1948, Տոկիո): Բոլոր ամբաստանյալների մեղքը հաստատվել է: Տրիբունալի դատավճռով 7 հոգու (այդ թվում՝ նախկին վարչապետներ Կոկի Հիգոտան և Հիդեկի Տոձիոն) մահապատժի են ենթարկվել կախաղանի միջոցով (իրականացվել է 1948-ի դեկտ. 23-ին), 15-ը դատապարտվել են ցմահ բանտարկության, 32-ը՝ տարբեր ժամկետներով:

ՏՈԿԻՈՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Ճապոնիայի հնագույն և աշխարհի առաջատար բուհերից: Հիմնադրվել է 1877-ին: 2015-ին ուներ ավելի քան 30 հզ. ուսանող:

ՏՈԿՄԱԲԱԵՎ Աալի (1904–1988), Ղրղզ. ԽՍՀ ժող. բանաստեղծ (1945) և ԳԱ ակադ. (1954): Սոց. աշխ. հերոս (1974): Ղրղզ. գրկ-յան հիմնադիրներից: Հեղինակ է «Լենինի մասին» (1927), «Օրհնություն» (1944), «Ժամանակի ձայնը» (1965), «Իմ ընծան» (1974) բանաստեղծությունների ժող-ների, ինքնակալության դեմ ղրղզ ժողովրդի մղած ազգ-ազատագր. պայքարին նվիրված «Արշալույսից առաջ» (1935–47) չափածո վեպի, նաև վիպակների, պիեսների:

ՏՈԿՄԱԲԱԵՎԱ Այսուլու Ասանբեկի (ծ. 1947), բալետի ղրղզ արտիստուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1981): 1967-ից՝ Ղրղզ ՕԲԹ-ի մենապարուհի (Կարմենն՝ Ժ. Բիզեի «Կարմենն», Ջուլիետ՝ Ս. Ս. Պրոկոֆևի «Ռոմեո և Ջուլիետ», ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1976):

ՏՈԿՈՖԵՐՈԼՆԵՐ, E վիտամիններ, ճարպալույծ վիտամինների խումբ: Սինթեզում են բույսերը: Դրանցով հարուստ են բուս. յուղերը: Անբավարարությունը հանգեցնում է անպտղության: Օգտագործում են բժշկության և անասնաբուծության մեջ:

ՏՈԿՈՒԳԱՎԱ Իեյասու (1543–1616), Տոկուգավա հարստության հիմնադիրը Ճապոնիայում: Ավարտին է հասցրել երկրի միավորումը, որն սկսել էին Ն. Օդան և Հ. Տոյետոմին:

ՏՈԿՈՒԴԱ Կյուիտի (1894–1953), Ճապոնիայի կոմկուսի հիմնադիրներից: 1945-ի դեկտ-ին ընտրվել է ԿԿ գլխ. քարտուղար:

ՏՈՀՄ, 1. իր ծագումը մի գծով (մայր. կամ հայր.) տանող, միևնույն նախնուց (իրական կամ առասպել.) սերած լինելու ինքնագիտակցությամբ, ընդհ. տոհմանուն կրող և արյունակից մարդկանց խումբ: Տ. բնորոշ է ***նախնադարյան համայնական հասարակարգին, մայրիշխանության, հայրիշխանության ժամանակաշրջաններին, համայնքին, գերդասպանին, ընտանիքին***: 2. Միևնույն իրական նախնուց ծագած մի շարք սերունդներ (օր.՝ Բագրատունիների Տ., Ռուբինյանների Տ. ևն):

ՏՈՀՄԱԾՈՒՄ, *ֆիլոգենետիկական ծառ* (կենսբ.), օրգանիզմների որևէ տաքսոնոմ. խմբի ներսում կամ ամբողջ օրգ. աշխարհի ազգակց. կապերի պատկերումը ծառի տեսքով:

ՏՈՂԼԱՆՅԱՆ Գրիգոր Գևորգի (1928–1993), անասնաբույծ: Գղտ. գիտ. դ-ր (1974), պրոֆ. (1979): Աշխ-ները վերաբերում են Հայաստանի ոչխարաբուծության, խոզաբուծության բարելավման և մթերատվության բարձրացման խնդիրներին:

ՏՈՂԼՈՒԿ-ԹԻՄՈՒՐ (ծ. թ. անհտ–մոտ 1363), Մողոլիստանի հիմնադիրն ու խանը: Մինչև 1570-ական թթ. Արլ. Թուրքեստանում իշխած հարստության հիմնադիրը:

ՏՈՄ, գետ Արմ. Սիբիրում, Օբի աջ վտակը: Երկ.՝ 827 *կմ*, ավազանը՝ 62 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1090 *մ*^{3}/*վ*: Լուղարկելի է: Նավարկելի է 643 *կմ*: Տ-ի ափին են Նովոկուզնեցկ, Կեմերովո, Տոմսկ քաղ-ները:

ՏՈՄԱՋԵՈ (Tommaseo) Նիկոլո (1802–1874), իտալացի գրող, բանասեր, բառարանագիր, հայագետ: Հեղինակ է «Աթենքի դուքսը» (1837) և այլ պատմավեպերի, բանասիր. աշխ-ների: Կազմել է բառարաններ («Իտալերենի բառարան», հ. 1–8, 1861–79): Թարգմանել է Մովսես Խորենա-

ցու և Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ները, որոնց իտալ. առաջաբաններում արժևորել է հայ հին գրկ-ն ու լեզուն:

ՏՈՄԱԶԻ (Thomasius) Քրիստիան (1655–1728), գերմանացի իրավաբան և փիլ.: Աշխ-ները վերաբերում են բնական իրավունքի հարցերին: Գլխ. աշխ-ը՝ «Բնական իրավունքի հիմունքներ» (1705):

ՏՈՄԱԶԻ ԴԻ ԼԱՄՊԵԴՈՒԶԱ (Tomasi di Lampedusa) Ջուզեպպե (1896–1957), իտալացի գրող: Հեղինակ է սոցիալ-հոգեբ. «Ընձառյուծը» (հրտ.՝ 1958, կինոնկար՝ 1962, ռեժ.՝ Լ. Վիսկոնտին) վեպի, նաև պատմվածքների, գրականագիտ. ուսումնասիրությունների:

ՏՈՄԱՐ, տես *Հայոց կոմար*:

ՏՈՄԲԱԼԲԱՅ (Tombalbaye) Նգարտա (Ֆրանսուա, 1918–1975), Չադի Հանրապետության 1-ին նախագահ-վարչապետը՝ 1960–75-ին: 1960–62-ին եղել է Առաջադիմ. կուս-յան նախագահ, 1963–73-ին՝ գլխ. քարտուղար, 1973-ից՝ Ազգ. շարժում կուս-յան գլխ. քարտուղար: Սպանվել է ռազմ. հեղաշրջման ժամանակ:

ՏՈՄՈՆԱԳԱ, Սինյիտիրո (1906–1979), ճապոնացի տեսաբան-ֆիզիկոս: Քվանտ. էլեկտրադինամիկայի հիմնադիրներից: ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1971): Աշխ-ները վերաբերում են նեյտրոնների տեսությանը, մագնիսականությանը, դաշտի քվանտ. տեսությանը: Նորելյան մրց. (1965, Ռ. *Ֆեյնմանի* և Ջ. *Շվինգերի* հետ):

ՏՈՄՍԿ, ք. ՌԴ-ում, համանուն մարզի վարչ. կենտրոնը, նվինգստ Տոմ գետի ափին: Բն.՝ 501 հզ. (2009): Երկթղ. կայարան է: Հիմնադրվել է 1604-ին:

ՏՈՄՍԿԻ (Գրիշին) Նիկոլայ Վասիլևիչ (1900–1984), ռուս. քանդ.: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1960): Սոց. աշխ. հերոս (1970): ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի անդամ (1949, նախագահ՝ 1968–83-ին): Հեղինակ է հուշարձանների (Ս. Մ. Կիրովի, 1938, Լենինգրադ, Վ. Ի. Լենինի, 1970, Բեռլին), դիմաքանդակների («Ի. Դ. Չեռնյախովսկի», 1947, «Ա. Ս. Սիմոնով», 1948, ևն), մոնումենտալ դեկորատիվ քանդակների: Տ-ի Ս. Մ. Կիրովի դիմաքանդակը (1952) ՀԱՊ-ում է:

ԽՍՀՄ Պետ. (1941, 1948, 1949, 1950, 1952, 1979), Լենինյան (1972) մրց-ներ:

ՏՈՄՍԿԻ ՄԱՐԶ, վտմ ՌԴ Սիբիր. դաշն. օկրուգում: Տարածքը՝ 314,4 հզ. *կմ²*, բն.՝ շուրջ 1 մլն (2009): Ունի 16 շրջան, 6 քաղաք, 1 քտա: Վարչ. կենտրոնը՝ ***Տոմսկ***: Կազմավորվել է 1944-ին:

ՏՈՄՍՈՆ Ալեքսանդր Իվանովիչ (1860–1935), ռուս լեզվաբան, հայագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1910): Ուսումնասիրել է Ախալցխայի (1887), լեհահայոց (1899) բարբառները: «Թիֆլիս քաղաքի ժամանակակից հայոց լեզվի պատմական քերականություն» (1890) աշխ-յան մեջ Տ. քննել է թիֆլիսահայ բարբառը, նրա առնչությունները դասական գրաբարի հետ: Հեղինակ է նաև «Ընդհանուր լեզվաբանություն» (1906) աշխ-յան:

ՏՈՅՈՏԱ, ք. Ճապոնիայում՝ Նագոյա ագլոմերացիայում՝ Հոնսյու կղզու հվ-արլ-ում: Բն.՝ 420 հզ. (2014): Երկթղ. և ավտոմայրուղիների հանգույց է, ավտոմեքենաշինն. կենտրոն (Տ-ում են «Տոյոտա» ընկ-յան գործարանները):

«ՏՈՅՈՏԱ ՄՈՄՈՐ», ճապոն. խոշորագույն ավտոմեքենաշինն. ընկ.: Հիմնադրվել է 1937-ին: Վաճառքի ծավալը՝ 8,6 մլն ավտոմեքենա (2016): Հիմն. արտադր. հզորությունները Ճապոնիայում են, ձեռնարկ ունի նաև ԱՄՆ-ում, Թաիլանդում, Կանադայում և Ինդոնեզիայում:

ՏՈՅՈՏՈՄԻ Հիդեյոսի (1536–1598), ճապոնացի պետ. գործիչ, զորավար: 1592–98-ին նվաճող. պատերազմ է մղել Կորեայի դեմ՝ հետագայում Չինաստանը և Հեռավոր արլ. այլ երկրներ գրավելու նպատակով, սակայն պարտվել է:

ՏՈՆ Դիկ Թհանգ (1888–1980), Վիետնամի Սոց. Հանրապետության նախագահ՝ 1976-ից: 1969–76-ին՝ Վիետնամի Ժողովրդ. Հանրապետության նախագահ: 1955–76-ին՝ Վիետնամի հայրեն. ճակատի ԿԿ նախագահ, 1977-ից՝ պատվ. նախագահ:

ՏՈՆ Կոնստանտին Անդրեևիչ (1794–1881), ռուս. ճարտ.: Ռուս-բյուզ. ոճի հիմնադիրը: Մոսկվայում կառուցել է Քրիստոս Փրկչի տաճարը (1837–83, ավերվել է 1931-ին, վերականգնվել 1995–2000-ին), Կրեմլի Մեծ պալատը (1839–49) և Զինապալատը (1844–51), Մոսկվայի Հոկտ. (նախկինն՝ Նիկոլաևյան, 1845–52) և Ս. Պետերբուրգի (1844–51) երկթղ. կայարանների շենքերը:

ՏՈՆԱԿԱՆՅԱՆ Լևոն Արամի (1911–1941), նկարիչ: Հեղինակ է բնանկարների, նատյուրմորտների, գրաֆիկ. գործերի («Սահմանապահներ», կոմպոզիցիա, Երևանի Կոնդ թաղամասի պատկերների շարք, «Ինքնանկար», բոլորը՝ ՀՍՊ):

ՏՈՆԱՅԻՆ ՀԵՌԱԳՐՈՒԹՅՈՒՆ, հեռախոս. կապուղիներով հեռագր. հաղորդագրությունների հաղորդման մեթոդ՝ տոնային հաճախությունների տիրույթի (300–3400 *Հց*) փոփոխ. հոսանքի օգտագործմամբ: Տ. հ-յան դեպքում հեռախոս. ստանդարտ կապուղին բաժանվում է մի քանի Տ. հ-յան կապուղիների՝ ըստ հաճախության կամ ըստ ժամանակի: Ի հայտ է եկել 1930-ական թթ-ին, 1960-ական թթ-ից դարձել է հեռագրության հիմն. մեթոդը: Առավել տարածված է հաճախ. մոդուլմամբ Տ. հ., ինչը բացատրում է ժամանակակից սարքերի բարձր խանգարումապաշտպ. հատկությունները:

ՏՈՆԱՊԵՏՅԱՆ Ավետիս (Avedis Donabedian, 1919–2000), բժիշկ: Բժշկ. գիտ. դ-ր (1944), Միչիգանի համալսարանի պրոֆ.: Առաջարկել է բժշկ. խնամատարության որակի հետազոտման սեփ.՝ Տ-ի մոդել: Հետազոտությունների արդյունքները ամփոփված են «Որակի և մոնիթորինգի որակի հետազոտություններ» (1980–85) և «Որակի և մոնիթորինգի գնահատման եղանակներ ու հետազոտություններ» (անգլ., 1985) աշխ-ներում:

ՏՈՆԱՊԵՏՅԱՆ Գևորգ (1927–1996), մանկավարժ, խմբ.: 1961–67-ին՝ Հալեպի Քարեն Եփփե ազգ. ճեմարանի տնօրեն, 1968–76-ին՝ ԱՄՆ-ի Արլ. շրջանի ՀՅԴ կենտկոմի քարտուղար, 1976–79-ին՝ «Արմինիոն Ուիքլի» շաբաթաթերթի վարիչ-տնօրեն, 1979–90 և 1994–96-ին՝ ՀՅԴ *«Հայրենիք»* շաբաթաթերթի խմբ.:

ՏՈՆԱՊԵՏՅԱՆ-ԴԵՄՈՊՈՒԼՈՍ Անահիտ Ավետիսի (ծ. 1962), լեզվաբան, հայագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1991), պրոֆ.: ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (2011): 1999-ին Փարիզում կազմակերպել է հայագիտ-յան VI միջազգ. գիտաժողովը: Աշխ-ները վերաբերում են արևմտահայ քերակ-յան, ընդհ. լեզվաբ-յան հետ հայ-ի բաղդատման, հայ-ի բարբառների համադրման, արևմտահայ-ը, որպես սփյուռքի լեզու, ճանաչելու հարցերին: Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» շքանշան (2014):

ՏՈՆԳԱ, բանտու խմբի ժողդ Զամբիայում (1,5 մլն, 2010, երկրի՝ թվաքանակով 2-րդ խոշոր ժողդ-ը) և Զիմբաբվեում (140 հզ.): Լեզուն՝ տոնգա: Հավատացյալները հիմնականում քրիստոնյա են:

ՏՈՆԳԱ, (Tonga), ***Տոնգայի Թագավորություն*** (Kingdom of Tonga), կղզային պետություն Խաղաղ օվկ-ի հվ-արմ-ում, համանուն կղզեխմբի վրա: Տարածքը՝ 747 *կմ²*, բն.՝ 105,3 հզ. (2013): Մայրաքաղաքը՝ ***Նուկուալոֆա*** (բն.՝ 24,3 հզ., 2010): Պետ. լեզուները՝ անգլ., տոնգա: Կառավարման ձևը՝ սահմանադրամիապետ.: Պետության գլուխը թագավորն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Հավատացյալների մեծ մասը քրիստոնյա (բողոքական) է: Բաժանված է 3 կղզեխմբի: Անդամակցում է ՄԱԿ-ին, Ազգերի համագործակցությանը: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 4,6 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է հիմնականում գյուղմթերք և ձուկ, ներմուծում՝ նավթմթերք, մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ պաանգ:

V դ-ի վերջ–VI դ-ի սկզբին Տ-ի կղզիներում բնակություն են հաստատել պոլինեզիացիները: Մոտ X դ-ում Տ-ում առաջացել են առաջին պետ. կազմավորումները՝ առաջնորդների ժառանգ. իշխանությամբ: 1643-ին Տոնգատապու կղզին հայտնագործել է Ա. *Թասմանը*: 1797-ին Տ. մուտք են գործել քրիստոնյա քարոզիչներ: 1845-ին ստեղծվել է կենտրոնացված պետություն: XIX դ-ի 70–80-ական թթ-ին Ֆրանսիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ն պայմանագիր են կնքել Տ-ի հետ՝ ձևականորեն ճանաչելով նրա անկախությունը: 1900-ին Տ-ում հաստատվել է Մեծ Բրիտանիայի պրոտեկտորատ: 1968-ին Մեծ Բրիտանիայի ու Տ-ի միջև կնքվել է նոր համաձայնագիր՝ բրիտ. հսկողությունն աստիճանաբար կրճատելու վերաբերյալ: Անկախացել է 1970-ին: 2006-ից երկիրը կառավարում է Ջորջ Տուպոու V թագավորը:

ՏՈՆԳԱՅԻՆԵՐ (ինքնանվանումը՝ տոնգա), պոլինեզ. ժողդ, Տոնգայի հիմն. բնակչությունը: Ընդհ. թիվը՝ շուրջ 120 հզ. (2010): Ապրում են նաև Նոր Զելանդիայում (37,9 հզ., 2001): Լեզուն՝ տոնգաերեն: Հավատացյալները հիմնականում քրիստոնյա են:

ՏՈՆԵԳԱՎԱ Սուձումի (Սուսումու, ծ. 1939), ճապոնացի գենետիկ: 1960-ական թթ-ից՝ ԱՄՆ-ում: Աշխ-ները վերաբերում են իմունոգենետիկային, հաստատել է Տ-լիմֆոցիտների ընկալիչների գեների կառուցվածքը, իմունոգլոբուլինների գեների ընդհատուն կառուցվածքը: Նոբելյան մրց. (1987):

ՏՈՆԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ, կրոնադից. կարևոր իրադարձությունների և անձանց պատվին սահմանված օրեր: Այդ տոները պաշտամունքի կարևոր մաս են և նշվում են հատուկ շուքով: Նպատակը հավատացյալների մեջ կրոնի հեղինակության ամրապնդումն է: ՀԱԵ սահմանել է Սբ Ծննդյան և Աստվածահայտնության, Սբ Հարության (Սբ Զատկի), Պայծառակերպության, Սբ Մարիամ Աստվածածնի Վերափոխման, Խաչվերացի, նաև Տյառնընդառաջը, Գրիգոր Լուսավորչին, Թարգմանչաց, Վարդանանց, սրբադասված գործիչների, պատերազմների զոհերի, Սարդարապատի հերոսամարտում և Արցախյան պատերազմում ընկածների հիշատակին, Սրբադասման նվիրված տաղավար տոները:

ՏՈՆԵՐ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐ ՀՀ և ԼՂՀ, պատմության կարևորագույն իրադարձությունների և համազգ. հիշատակի պետականորեն սահմանված օրեր:

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքով (ընդունվել է 2001-ի հուլիսին) Հայաստանում սահմանվել և նշվում են.

Ամանոր և Սբ Ծննդյան տոներ. նշվում է դեկտ. 31-ից հունվ. 6-ը:

Բանակի օր. հունվ. 28, 1992-ին այդ օրը հիմնադրվել է ՀՀ ՊՆ-ն:

Մայրենի լեզվի օր. փետր. 21, միջազգ. տոն է, նշվում է 1999-ից:

Կանանց տոն. մարտի 8, միջազգ. տոն է, նշվում է 1911-ից՝ Կլարա Ցետկինի նախաձեռնությամբ:

Մայրության և գեղեցկության տոն. ապրիլի 7, խորհրդանշում է Մարիամ Աստվածածնի սբ հղիության ավետման օրը:

Ցեղասպանության զոհերի հիշատակի օր. ապրիլի 24 (1915, նշվում է 1965-ից):

Աշխատանքի օր. մայիսի 1, միջազգ. տոն է, նշվում է 1890-ից:

Երկրապահի օր. մայիսի 8, սահմանվել է 2002-ին՝ Շուշիի ազատագրման (1992-ի մայիսի 8–9) առթիվ:

Հաղթանակի և խաղաղության տոն. մայիսի 9, ֆաշիստ. Գերմանիայի դեմ ԽՍՀՄ ժողդ-ների տարած հաղթանակի օրն է:

Հանրապետության տոն. մայիսի 28, 1918-ի այդ օրը հռչակվել է Հայաստանի առաջին հանրապետությունը:

Երեխաների իրավունքների պաշտպան օր. հունիսի 1, միջազգ. տոն է, նշվում է 1950-ից:

Սահմանադրության օր. հուլիսի 5, 1995-ի այդ օրը համաժող. հանրաքվեով ընդունվել է ՀՀ Սահմանադրությունը:

Գիտելիքի, գրի և դպրության օր. սեպտ. 1:

Անկախության տոն. սեպտ. 21, 1991-ի այդ օրը համաժող. հանրաքվեով հռչակվել է ՀՀ անկախությունը:

Ուսուցչի օր. հոկտ. 5, նշվում է 1994-ից:

Թարգմանչաց տոն. նշվում է հոկտ. 2-րդ շաբաթ օրը: Խորհրդանշում է հայոց գրերի գյուտը, Աստվածաշնչի հայ. առաջին թարգմ-յունը և հայ դպրության սկիզբը:

Երկրաշարժի զոհերի հիշատակի օր. դեկտ. 7 (1988):

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ԼՂՀ օրենքով (ընդունվել է 2009-ի հուլիսին) սահմանվել և նշվում են.

Ամանոր և Սբ Ծննդյան տոներ. նշվում են դեկտ. 31-ից հունվ. 6-ը:

Արցախի վերածննդի օր. փետր. 20, 1988-ի այդ օրը սկսվել են ԼՂ անկախացման ցույցերը:

Մայրենի լեզվի օր. փետր. 21, միջազգ. տոն է, նշվում է 1999-ից:

Հայրենիքի պաշտպանի օր. փետր. 23:

Ցեղասպանության զոհերի հիշատակի օր. ապրիլի 24:

Կանանց միջազգ. օր. մարտի 8:

Մայրության և գեղեցկութան տոն. ապրիլի 7:

Աշխատավորների համերաշխության միջազգ. օր. մայիսի 1:

Հաղթանակի տոն, ԼՂՀ ՊԲ ստեղծման և Շուշիի ազատագրման օր. մայիսի 9:

Հայաստանի առաջին հանրապետության օր. մայիսի 28:

Երեխաների պաշտպ-յան միջազգ. օր. հունիսի 1:

Գիտելիքի և դպրության օր. սեպտ. 1:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օր. սեպտ. 2, 1991-ի այդ օրը հռչակվել է ԼՂՀ անկախությունը:

Թարգմանչաց տոն. նշվում է հոկտ. 2-րդ շաբաթ օրը:

Երկրաշարժի զոհերի հիշատակի օր. դեկտ. 7:

ԼՂՀ պետ. անկախության մասին հանրաքվեի և սահմանադրության օր. դեկտ. 10:

ՀՀ-ում և ԼՂՀ-ում նշվում են նաև միջազգ., ավանդ., եկեղեց., մասնագիտ. այլ տոներ և հիշատակի օրեր:

ՏՈՆԶԻԼԻՏ, տես *Նշիկաբորդ*:

ՏՈՆԻԿՅԱՆ Զորի Արտակի (1927–1990), ճարտ.: ՀԽՍՀ վաստ. ճարտ. (1982): Վիլեն *Տոնիկյանի* եղբայրը: Տ-ի նախագծերով և համահեղինակությամբ Երևանում կառուցվել են Կ. Սարաջևի անվ. երաժշտ. դպրոցը (1956), «Կանազ» գործարանի հիվանդանոցը (1961), Քարի և սիլիկատների ինստ-ի (1963–68), «Հայհաստոց»-ի (1966–76) համալիրները, Աբովյանում՝ ՀԽՍՀ ԳԱ միկրոկենսբ-յան ինստ-ը (1964–88) և այլ շինություններ:

ՏՈՆԻԿՅԱՆ Վիլեն Արտակի (ծ. 1926), ճարտ.: ՀՀ վաստ. ճարտ. (1972): Զորի *Տոնիկյանի* եղբայրը: Համահեղինակ է «Նուռնուս» (1965), «Ձրվեժ» (1966), «Էջմիածին» (1972), «Չարենցավան» (1978), «Սպիտակ» (1989) և այլ արդ. հանգույցների գլխ. հատակագծերի, Երևանում՝ «Կանազ» գործարանի բանավանի (1950–56), Քարի և սիլիկատների ինստ-ի (1963–68) համալիրների, Կ. Սարաջևի անվ. երաժշտ. դպրոցի (1956) և այլ շինությունների նախագծերի:

«ՏՈՆԻԿՅԱՆ», գրահրտչ. համալիր: Հիմնադրել է Կիրակոս Տոնիկյանը 1922-ին Դամասկոսում. 1924-ին տեղափոխել է Բեյրութ: Հրատարակում է հայ գրողների (նաև օտարագիր՝ բնագրով և թարգմանարար) ստեղծագործություններ, գիտ. ուսումնասիրություններ, բառարաններ, երգարաններ, դասագրքեր ևն:

ՏՈՆՅԱՆ Արշակ Հովսեփի (1888–1942), մաթեմատիկոս, մանկավարժ: Պրոֆ. (1960): 1925–28-ին՝ տեխ., 1936–37-ին՝ ֆիզմաթ. ֆակ-ների դեկան: Թարգմանել է 11 դասագիրք (մաթ., ֆիզիկա, քիմիա), կազմել տերմինաբանության բառարաններ: 1937-ին անհիմն բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

ՏՈՆՆԱ (ֆրանս.՝ tonna, < միջնադար. լատ. tunna – տակառ), ՄՏՎ միավորների համակարգի զանգվածի հիմն. միավորը, հավասար է 1000 *կգ*:

ՏՈՆՈՅԱՆ Անահիտ Հովհաննեսի (ծ. 1942), ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դ-ր (1996): Սևան *Դավթյանի* կինը: Աշխ-ները վերաբերում են ստիրոլի և մեթիլմետակրիլատի ադիաբատ պոլիմերման օրինաչափությունների ուսումնասիրմանը: ՀՀ նախագահի մրց. (2016, Ս. Դավթյանի հետ):

ՏՈՆՈՅԱՆ Թադևոս Վոլոդյայի (ծ. 1961), գրող, լեզվաբան, գրականագետ, խմբ.: Բանասիր. գիտ. թեկնածու (1989): 1991-ից՝ *«Աղբյուր»* հանդեսի գլխ. խմբ.: Հեղինակ է «Մայրերու հրեշտակներ» (1997), «Երկնքից առաջ» (2010), «Սահմանումներ Հայաստանի համար» (2015) և բանաստեղծությունների այլ ժող-ների, «Եղիշեի ակամա ընդդիմախոս Եղիշեն» (2002) և այլ աշխ-ների: Աշակույթի հայկ. հիմնադրամի «Տարվա լավագույն բանաստեղծություն» մրց. (1999), ՀՀ վարչապետի հուշամեդալ (2014), ՄՆ ոսկե մեդալ (2008):

ՏՈՆՈՅԱՆ Մարտին Վաղինակի (ծ. 1946), նկարիչ, գրաֆիկ: Ձևավորել է Էջմիածնի Պիոներ պալատը (1980), Ստեփանավանի (1982), Սևանի (1983) մշակույթի տները, Երևանի «Կանազ» գործարանը (որմնանկարներ, 1986–87) ևն: Հեղինակ է նաև գունանկարների («Վարդեր», 1995):

ՏՈՆՈՅԱՆ Վլադիմիր Սերգեյի (1935–2005), մեխանիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1993), պրոֆ. (1993): 1988-ից՝ ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստ-ի փոխտնօրենն: Աշխ-ները վերաբերում են պրիզմայաձև առաձգ. ձողերի ոլորման ու ծռման խնդիրներին, համասեռ և անհամասեռ առաձգ. և էլեկտրաառաձգ., կոշտ կամ առաձգ. մարմինների և խառը եզրային խնդիրներին: Տվել է այդ խնդիրները նկարագրող զույգ և եռակի ինտեգրալ կամ շարք հավասարումների լուծման ձևափոխվող օպերատորների եղանակ:

ՏՈՊԱԶ, սիլիկատների ենթադասի միներալ՝ $Al_2[SiO_4](F,OH)_2$: Առաջացնում է պրիզմայաձև բյուրեղներ, հատիկավոր ագրեգատներ, հաճախ՝ դրուզներ: Անգույն է, երկնագույն, վարդագույն, գինու դեղին: Կարծր.՝ 8, խտ.՝ 3,4–3,6 *գ/սմ³*: Տ-ի թափանցիկ, անգույն գունավորված բյուրեղներն օգտագործվում են որպես 2-րդ կարգի թանկարժեք քարեր:

ՏՈՊԵԼԻՈՒՍ (Topelius) Ցակարիաս (1818–1898), ֆինն շվեդագիր գրող: 1875–78-ին՝ Հելսինկիի համալսարանի ռեկտոր: Հեղինակ է «Հավամրգու ծաղիկներ» (հ. 1–3, 1845–54) ռոմանտիկ. բանաստեղծությունների ժող-ի, «Ֆինլանդացի դքսուհին» (1850) ֆինն առաջին պատմավեպի, Շվեդիայի և Ֆինլանդիայի պատմության մասին «Ֆելդշերի պատմությունները» (գիրք 1–5, 1853–67) շարքի, մանկ. գրքերի, «Ձմեռային գիշերներ» (գիրք 1, 2, 1880, 1897) պատմ. թեմաներով պատմվածաշարի: Շվեդիայի ակադ-ի ոսկե մեդալ (1886):

ՏՈՊՈԼՈԳԻԱ (< հուն. topos – տեղ և *...լոգիա*), մաթ-ի բնագավառ. ուսումնասիրում է երկրչփ. պատկերների այն հատկությունները, որոնք անփոփոխ են մնում առանց խզումների և սոսնձումների դեֆորմացիաների (ավելի ստույգ՝ փոխմիարժեք և անընդհատ արտապատկերումների) ժամանակ: Պատկերների տոպոլոգ. հատկությունների օրինակներ են չափողականությունը, տվյալ տիրույթը սահմանափակող կորերի թիվը ևն: Այսպես՝ շրջանագիծը, էլիպսը, քառակուսու եզրագիծն ունեն նույն տոպոլոգ. հատկությունները, քանի որ այդ գծերը կարող են վերածվել մեկը մյուսին՝ փոխմիարժեք և անընդհատ արտապատկերումների միջոցով: Իսկ օղը և շրջանն ունեն տարբեր տոպոլոգ. հատկություններ, քանի որ շրջանը սահմանափակված է 1 եզրագծով, օղը՝ 2:

ՏՈՊՈՐԿՈՎ Վասիլի Օսիպովիչ (1889–1970), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1948), 1927-ից՝ ՄԳԱԹ-ում (Չիչիկով՝ «Մեռած հոգիներ»՝ ըստ Ն. Վ. Գոգոլի, Օրգոն՝ Մոլիերի «Տարտյուֆ», Կրուգովսկուով՝ Լ. Ն. Տոլստոյի «Լուսավորության պտուղները», ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1952):

ՏՈՊՈՐՈՎ Վլադիմիր Նիկոլաևիչ (1928–2005), ռուս բանասեր, լեզվաբան: ՌԳԱ

ակադ. (1990): Հեղինակ է «Ճակատագրի մարդ Էնեոսը» (1993), «Առասպել: Ծես: Կերպար: Խորհրդանիշ» (1994), «Կարամզինի «Թշվառ Լիզան»», «Սրբությունը և սրբերը ռուսական հոգևոր մշակույթում» (երկուսն էլ՝ 1995) և այլ աշխ-ների, «Ռուսական գրականության պետերբուրգյան տեքստը» (2003) մենագրության, «Պրուսբրենն» (հ. 1–5, 1975–90, Ա–Լ, հրտ. անավարտ է) բառարանի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1990):

ՏՈՊՈՔԻՄԻԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ, պինդ մարմնի մասնակցությամբ ընթացող քիմ. ռեակցիաներ (պինդֆազային): Տ. ռ-ի յուրահատկությունը դրանց կենտրոնացումն է պինդ ռեագենտների և արգասիքների մակերևույթի վրա այն մասերում, որտեղ բյուրեղացանցն արատներ ունի: Տ. ռ-ի վրա են հիմնված հանքանյութից մետաղների վերականգնումը, շին. և կիսահաղորդչ. նյութերի արդ. ստացումը:

ՏՈՊՉԻԵՎ Ալեքսանդր Վասիլևիչ (1907–1962), ռուս. քիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1949, գլխ. գիտ. քարտուղար՝ 1949–59-ին և փոխնախագահ՝ 1958-ից): Աշխ-ները վերաբերում են ածխաջրածինների նիտրացմանը, հալոգենացմանը, ալկիլացմանը, սիլիցիումօրգ. միացություններին, արդ. կատալիզորդներին: Լենինյան (1962), ԽՍՀՄ Պետ. (1950) մրց-ներ:

ՏՈՌԵՍ (Torres) Լուիս Վաես դե (1560–1614), իսպանացի ծովագնաց: Մասնակցել է Պ. Կիրոսի 1605–06-ի գիտարշավին: Հայտնագործել է Նոր Գվինեայի հվ. ափը, Կորալյան ծովը, ***Պապուա և Տոռես նեղուցները***:

ՏՈՌԵՍ Ի ՎԻԼՅԱՌՈԵԼ (Torres y Villarroel) Դիեգո դե (1694–1770), իսպանացի գրող: Հեղինակ է բնական գիտ-յուններին, մոգությանը, ոգեհարցությանը վերաբերող աշխ-ների, երազահանների, որոնք նրան բերել են գրքացի համբավ, խաբեբայապատում վեպի ավանդներով «Բժիշկ Վիլյառոելի կյանքը» (1743–58) ինքնակենսագր. երկի, նաև դրամատիկ և բանաստեղծ. գործերի:

ՏՈՌԵՍԻ ՆԵՂՈՒՅՑ (Torres Strait), Նոր Գվինեայի և Ավստրալիայի միջև: Միացնում է Հնդ. և Խաղաղ օվկ-ները: Երկ.՝ 74 *կմ*, լայն.՝ 170 *կմ*, նավարկուղում խոր.՝ 7,4 *մ*: Կան շատ կղզիներ, ժայռեր, խութեր: Անվանվել է ի պատիվ իսպանացի ճանապարհորդ Լ. Վ. ***Տոռեսի***:

ՏՈՐՆԴԱՅՔ, **Թորնդայք** (Thorndike), Սիբիլ (1882–1976), անգլիացի դերասանուհի: 1904-ից խաղացել է Վ. Շեքսպիրի («Մակբեթ»), Սոֆոկլեսի («Էդիպ արքա»), Եվրիպիդեսի («Տրոյուհիներ», «Մեդեա») ողբերգություններում:

ՏՈՍԱԽ (Toxas), **շիմշատ**, **շիմշիր**, **սամշիտ**, կովկաս. արմավենի, տոսախազգիների ընտանիքի մշտադալար թփերի և ծառերի ցեղ: Հայտնի է մոտ 50 տեսակ: Այսրկովկասում աճում է մնացուկ. 2 տեսակ: Դեղին, կարծր բնափայտն օգտագործում են խառատ. գործիքներ պատրաստելու համար:

ՏՈՍԿԱՆԱ (Toscana), մարզ Իտալիայում: Տարածքը՝ 23 հզ. *կմ*^{2}, բն.՝ 3,75 մլն (2014): Վարչ. կենտրոնը՝ ***Ֆլորենցիա***: Անցյալում՝ Տ-ի մեծ դքսություն, պետություն Կենտր. Իտալիայում՝ 1569-ից: 1801–07-ին Տ-ի տարածքում եղել է Էտրուրիայի թագավորությունը, ապա միացվել է Ֆրանսիային: ***Վիեննայի խորհրդաժողովը*** (1814–15) վերականգնել է Տ-ի մեծ դքսությունը: ***Ռիսորջիմենտոյի*** ընթացքում՝ 1860-ին, Տ-ի տարածքը միացվել է Սարդին. (1861-ից՝ Իտալ.) թագավորությանը:

ՏՈՍԿԱՆԻՆԻ (Toscanini) Արտուրո (1867–1957), իտալացի դիրիժոր: 1898–1903, 1906–29-ին (ընդհատումներով)՝ Միլանի «Լա Սկալա», 1908–15-ին՝ Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերա» թատրոնների գլխ. դիրիժոր: 1928-ից ղեկավարել է Նյու Յորքի ֆիլհարմոնիկ և ԱՄՆ-ի Ազգ. ռադիոյի նվագախմբերը: Մեծապես նպաստել է ժամանակակից դիրիժոր. արվ-ի, սիմֆ. և օպեր. երաժշտության զարգացմանը:

ՏՈՍՊ, գվո Վասպուրական նահանգ-ում՝ Տոսպավան կամ Վան կենտրոնով, Վանա լճի արլ. ափամերձ շրջանում: Մինչև Արշակունյաց թագավորության անկումը (428) եղել է արքունապատկան կալված, հետագայում անցել է ***Ռշտունիներին***, ապա՝ ***Արծրունիներին***: XX դ-ի սկզբին կազմում էր Վանի նահանգ-ի Վան–Տոսպ գվո-ը:

ՏՈՎՍՏՈՆՈԳՈՎ Գեորգի Ալեքսանդրովիչ (1913–1989), ռուս. ռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1957): Սոց. աշխ. հերոս (1983): 1938–46-ին՝ Թբիլիսիի ռուս. թատրոնի ռեժ., 1956-ից՝ Լենինգրադի Մեծ դրամատիկ. թատրոնի (1992-ից՝ Տ-ի անվ.) գլխ. ռեժ.: Բեմադրել է Վ. Վ. Վիշնևսկու «Լավատեսական ողբերգություն» (1955, 1981), «Ապուշը» (ըստ Ֆ. Մ. Դոստոևսկու, 1957, 1966), Մ. Գորկու «Բարբարոսներ» (1959), «Քաղքենիներ» (1966), «Հովվկնեը» (1976), «Չիու պատմությունը» (ըստ Լ. Ն. Տոլստոյի, Մ. Գ. Ռոզովսկու հետ, 1975), Ա. Պ. Չեխովի «Քեռի Վանյա» (1982) և այլ պիեսներ: ԽՍՀՄ Պետ. (1950, 1952, 1968, 1978), Լենինյան (1958) մրց-ներ:

ՏՈՏԵՄԻԶՄ (օջիբվե հնդկացիների լեզվում օտ-օտեմ – նրա տոհմը բառից), հավատալիքների և ծեսերի ամբողջություն, որը կապված է մարդկանց խմբերի (սովորաբար՝ տոհմերի) և այսպես կոչված տոտեմների՝ կենդանիների ու բույսերի տեսակների (երբեմն՝ բնության երևույթների ու անշունչ առարկաների) միջև զգակցության պատկերացումների հետ: Յուրաքանչյուր տոհմ կոչվել է իր տոտեմի անունով: Արգելված էր տոտեմին սպանելը, կերակուրներում նրան օգտագործելը:

ՏՈՏԻԼԱ (Totila, ծ. թ. անհտ–552), օստգոթերի թագավոր՝ 541-ից: Տ-ի զորքերը մի քանի անգամ պարտության են մատնել օստգոթերի թագավորությունը գրավել ձգտող Բյուզանդիային: Տ. մահացու վիրավորվել է Տագինի ճակատամարտում (552), որն ավարտվել է օստգոթերի պարտությամբ:

ՏՈՏՈ (Toto, Անտոնիո դե Կուրտիս–Գալյարդի, De Curtis–Gagliardi, 1898–1967), իտալացի կինոդերասան: Կոմեդիա դել լարտեին մոտ կատարման ժող. ավանդույթները, կատակերգ. հնարքների պայմանականությունն օրգանապես զուգակցել է խոր հոգեբ. բնութագրությունների հետ: Նկարահանվել է «Նեապոլը միլիոնատերերի քաղաք է», «Աստիկաններ և գողեր», «Նեապոլի ոսկին», «Օրենքն օրենք է», «Մեծ ու փոքր թռչուններ», ««Սուրբ Յանուարիուս» օպերացիան» և այլ ֆիլմերում:

ՏՈՏՈՄՅԱՆՑ (Տոտոմիանց, Թոթոմյանց) Վահան Թովմայի (1875–1952), տնտեսագետ, կոոպերատիվ շարժման տեսաբան: 1912-ից՝ Մոսկվայի համալսարանի պրիվատ-դոցենտ, 1915-ից՝ քաղաքատնտեսության ու վիճակագրության դ-ր: 1919-ից՝ վտարանդի: Աշխ-ները վերաբերում են քաղաքներում համընդհ. ընտրական իրավունքի, քաղաք. ինքնակառավարման գործառույթների ընդլայնման խնդիրներին:

ՏՈՏՈՆԱԿՆԵՐ, հնդկաց. ժողդ-ներ Արլ. Մեքսիկայում: Մոտ 400 հզ. մարդ (2010): Լեզուն ազգակից է պենուտների լեզվին: Հավատացյալները հիմնականում կաթոլիկ են:

ՏՈՐ (լատ.՝ toros – ուռուցիկություն), երկրչփ. մարմին, որն առաջանում է շրջանն իր հարթության մեջ գտնվող, բայց իր հետ չհատվող ուղղի շուրջը պտտելիս: Տ-ի մոտավոր ձև ունեն օղարլիթը, փրկարար օղակը: Տ-ով սահմանափակված մակերևույթը նույնպես երբեմն անվանում են Տ.:

ՏՈՐԱՋՆԵՐ, ժողդ-ների (սաղագներ, պոսո, կորո, պալու ևն) խումբ Ինդոնեզիայի Սուլավեսի կղզում: Ընդհ. թիվը՝ շուրջ 1,5 մլն (2000-ական թթ.): Խոսում են ինդոնեզ. լեզուներով: Հավատացյալները հիմնականում բողոք. քրիստոնյա են և սուննի մահմեդական:

ՏՈՐԲԵԿԵ, Թորբեկե (Thorbecke), Յոհան Ռուդոլֆ (1798–1872), Նիդեռլանդների վարչապետ՝ 1849–53, 1862–66 և 1871–72-ին: Լեյբորիստ. կուս-յան նախագահ՝ 1840-ից:

ՏՈՐԳԱ (Torga) Միգել (Կոռեյա դա Ռոշա, 1907–1995), պորտուգալացի գրող: Հեղինակ է «Ծարավ» (1928), «Ներբողներ» (1946) և քնարերգ. այլ ժող-ների, «Աշխարհի արարումը» (հ. 1–6, 1937–81) ինքնակենսագր., «Օրագիր» (հ. 1–16, 1941–94) երկերի, նաև ուղեգր. նոթերի, պիեսների, նովելների:

ՏՈՐԳՈՎ Իգոր Վլադիմիրովիչ (1912–2007), ռուս քիմիկոս: ՌԳԱ թղթ. անդամ (1972): Աշխ-ները վերաբերում են կենսաօրգ. քիմիային, բնական միացությունների, գլխավորապես՝ ստերոիդների սինթեզին: Առաջարկել է էստրոգենային և անաբոլիկ. հորմոնների ստացման արդ. եղանակ (Տ-ի ռեակցիա):

ՏՈՐԵԱԴՈՐ, **տորերո** (իսպ.՝ torero, toreador, toreo – ***ցլամարտ***), ցլամարտիկ:

ՏՈՐԵԼԼԻ (Torelli) Ստեֆանո (1712–1780), իտալացի գեղանկարիչ: 1762-ից աշխատել է Ռուսաստանում: Հեղինակ է որմնանկարների (Օրանիենբաումի Չին. պալատ, 1765–70), դից. թեմաներով առաստաղապատկերների և պաննոների:

ՏՈՐԻ (անգլ.՝ tory), անգլ. քաղ. կուս-յուն XVII–XIX դդ-ում: Ստեղծվել է 1670-ական թթ. վերջ–1680-ական թթ-ի սկզբին՝ որպես բացարձակ միապետության կողմնակիցների խմբավորում: 1720-ական թթ-ից Տ. դարձել է 2 առաջատար կուս-յուններից մեկը (***վիգերի*** հետ): XIX դ-ի կեսին Տ-ների հին կուս-յան հիմքի վրա ձևավորվել է Մեծ Բրիտանիայի պահպանող. կուս-յունը, որի կողմնակիցներին ոչ պաշտոնապես անվանում են նաև «տորի»:


ՏՈՐԻԽՈՍ ՀԵՐԵՐԱ (Torrijos Herrera) Օմար (1929–1981), պանամացի պետ. գործիչ, գեն. (1969): Տ. Հ-ի գլխավորությամբ 1968-ի հոկտ-ին Ազգ. գվարդիայի սպաները կատարել են պետ. հեղաշրջում: Ըստ 1972-ի սահմանադրության՝ համարվել է «Պանամայի հեղափոխության բարձրագույն ղեկավար»: 1972–78-ին՝ Կառ-յան ղեկ.: 1962-ից՝ Ազգ. գվարդիայի գլխ. հրամ.: Տ. Հ-ի կառ-յունը ստորագրել է 1977-ի ամերիկա-պանամ. համաձայնագրերը: Զոհվել է ավիավթարից:

ՏՈՐԻՉԵԼԼԻ (Torricelli) Էվանջելիստա (1608–1647), իտալացի ֆիզիկոս և մա-

թեմատիկոս: Գ. ***Գալիլեյի*** աշակերտը: Ստեղծել է սնդիկ. բարոմետրը, հայտնաբերել մթն. ճնշման և վակուումի (այսպես կոչված ***տորիչելյան դատարկություն***) գոյությունը: Արտածել է (1641) հետագայում իր անվամբ կոչված բանաձև (Տորիչելլիի բանաձև), որով որոշում են բաց անոթի փոքր անցքից հեղուկի արտահոսման արագությունը՝

$$v = \sqrt{2gh},$$

որտեղ h–ը հեղուկի բարձր–յան մակարդակն է՝ անցքի կենտրոնից հաշված (նկ.), g–ն՝ ծանրության ուժի արագացումը:



ՏՈՐԻՉԵԼՅԱՆ ԴԱՏԱՐԿՈՒԹՅՈՒՆ, անօդ տարածություն հեղուկի ազատ մակերևույթի վրա՝ վերևից հերմետիկ փակված անոթում: Եթե մի ծայրից փակ երկար ապակե խողովակը լցնենք սնդիկով և խողովակի մյուս՝ բաց ծայրը մտցնենք սնդիկով լի թասի մեջ, ապա խողովակում սնդիկի մակարդակը կիջնի, և նրա մակերևույթի վրա կգոյանա դատարկություն. վերջինիս առաջացումը բացատրել է Է. ***Տորիչելլին***. որպես թասի սնդիկի մակերևույթի վրա մթն–ի ճնշման հավասարակշռություն խողովակի միջի սնդիկի սյան կշռով: Այդ սյան բարձր. ծ. մ–ին 760 *մմ* է:

ՏՈՐՄԱԿ ԵԿԵՂԵՑԻ, VI դ–ի ճարտ. հուշարձան ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ գ–ից մոտ 2 *կմ* հվ (այժմ՝ կիսավեր): Միանավ, թաղածածկ կառույց է՝ քառակուսի հատակագծով ավանդատնով՝ ծածկված խաչվող թաղերով, 3 կողմից (հվ. արմ. և հս.) շրջապատված է սյունասրահով:

ՏՈՐՈՆ, ***գունարմատ***, տորոնազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի, կիսաթփերի և թփերի ցեղ: Հայտնի է մոտ 60 տեսակ (բարեխառն գոտում), ՀՀ–ում՝ 2՝ Տավուշի, Կոտայքի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի և այլ մարզերում: Ստորգետնյա օրգանները պարունակում են տորոնաներկ, որի հիմն. բաղադրիչն ***ալիզարինն*** է: 1736–ին Հովհաննես ***Ալթունյանը*** Տ–ի սերմերը Թուրքիայից գաղտնի տեղափոխել է Ֆրանսիա, հիմնել տնկաստաններ և մեծ օգուտ բերել ֆրանսիացիներին:

ՏՈՐՈՆՏՈ (Toronto), ք. Կանադայում, Օնտարիո պրովինցիայի վարչ. կենտրոնը, նվինգստո Օնտարիո լճի ափին: Բն.՝ 5 մլն (արվարձաններով, 2010): Ունի օդանավակայան, մետրոպոլիտեն: Առևտրա–արդ., ֆին. և մշակութ. կենտրոն է: Կան մեքենաշին., քիմ. արդ–յան և այլ ձեռնարկներ: Զարգացած են բարձրտեխնոլոգ. ճյուղերը: Գործում են բազմաթիվ բուհեր, թատրոններ և թանգարաններ:

Տ–ում հայերը բնակություն են հաստատել XIX դ–ի վերջից: Սակայն համայնքն սկսել է կազմավորվել 1920–ական թթ–ին: 1916–ին Լևոն Պապայանի նախաձեռնությամբ հիմնադրվել է ՀՕՄ–ը, 1923–ին՝ ՀԲԸՄ Տ–ի մասնաճյուղը: 1953–ին կառուցվել է Սբ Երրորդություն հայկ. եկեղեցին, գործում են նաև Սբ Խաչ, Սբ Մարիամ Աստվածածին եկեղեցիները, որոնց կից՝ մեկօրյա դպրոցներ, 3 ամենօրյա վարժարաններ, ազգ. կուս–յունները՝ ՀՅԴ «Սողոմոն Թեհլերյան» կոմիտեն (1956–ից) և ՀՅԴ երիտասարդ. միության «Սիմոն Զավարյան» մասնաճյուղը, ՌԱԿ–ի «Եսայի Յաղուբյան» ակումբը (1967), ՍԴՀԿ «Փարամազ» մասնաճյուղը (1983–ից), ՀՕՄ–ի «Ռուբինա» (1964–ից), Թեքեյան (1967–ից), Համազգ. (1969–ից, ունի «Ժորժ Սարգիսյան» թատերախումբ, «Գուսան» երգչախումբ, «Էրեբունի» պարախումբ), Նոր սերունդ (1978–ից) մշակութ. միությունների, Պոլսահայ մշակութ. միության (1988–ից), «Հայաստան» համահայկ. հիմնադրամի (1993–ից), Հայկ. ժամանակակից հետազոտությունների և փաստագրության Զորյան ինստ–ի (1985–ից) մասնաճյուղերը, Պապայան հիմնարկը, Հայ դատի հանձնախումբը, Տարեց քաղաքացիների ընկ–ը, «Կոմիտաս» երաժշտ. միությունը: Լույս են տեսնում «Նոր սերունդ» ամսագիրը, ՀԲԸՄ «Խոսնակ Տորոնտոյի», «Լուսաբաց» պարբ–ները: Գործում է «Հայ հորիզոն» հեռուստակայանը: Տեղի հայերի գլխ. հավաքատեղին Հայ կենտրոնն է: Տ. կանադահայության 2–րդ խոշոր կենտրոնն է՝ Մոնրեալից հետո: Ներկայում բնակվում է ավելի քան 30 հզ. հայ:

ՏՈՐՈՆՏՈՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Կանադայի առաջատար բուհերից: Հիմնադրվել է 1827–ին: 2015–ին ուներ ավելի քան 55 հզ. ուսանող:

ՏՈՐՈՊՈՎ, Անդրեյ Դմիտրևիչ (1851–1927), ռուս. մատենագետ, գրքագետ: 1889–ին հիմնադրել է Մոսկվայի մատենագետների խմբակը (1900–ից՝ Մոսկվայի համալսարանին կից Ռուսաստանի մատենագիտ. ընկ.): «Գրքագիտություն» (1894–97) և «Գրքերի տարեգրություն» (1907–20) հանդեսների խմբ., 1920–25–ին՝ Լենինգրադի գրքագիտ. ԳՀԻ–ին կից Գրքի թանգարանի տնօրեն:

ՏՈՐՊԵԴ (լատ.՝ torpedo – էլ. թեքատ), ***ջրական***, ինքնաշարժ, ինքնանշանառու կամ հեռուստակառավարվող ստորջրյա սիգարաձև սարք, որը կրում է սովոր. կամ միջուկ. մարտ. լիցք: Նախատեսված է վերջրյա և սուզանավերը կործանելու, նվինգստ–ները, նավանորոգարանները, առափնյա օբյեկտները ոչնչացնելու համար: Ներառված է սուզ. և վերջրյա նավերի, հակասուզանավ. ինքնաթիռների և ուղղաթիռների սպառազինության մեջ: Առաջին Տ–ները (ինքնաշարժ ականներ) ստեղծել են 1865–75–ին ռուս գյուտարար Ի. Ֆ. Ալեքսանդրովսկին (1817–1894) և բրիտանացի ճարտարագետ Ռ. Ուայթհեդը (1823–1905):

ՏՈՐՈՒՆԻ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ, 1. **1411**, կնքվել է Լեհաստանի Տորուն ք–ում: Ավարտել է «Մեծ պատերազմը» (1409–11): 2. **1466**, ավարտել է Տասներեքամյա պատերազմը (1454–66):

ՏՈՐՔ Ա.ՆԳԵՂ, ***Տուրք Անգեղյա***, հայ առասպելաբանության մեջ աստված կամ դյուցազն, ***Հայկի*** ծոռը: Ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության»՝ Տ. Ա. բարձրահասակ, կոպիտ կազմվածքով, դժնի հայացքով, վիթխարի ուժի տեր հսկա էր, որին տգեղության համար Անգեղյա են կոչել: Աստվածաշնչի հայ. թարգմ–յան մեջ շումերաաքքադ. Ներգալ աստծու անունը փոխարինվել է Անգեղով: Պաշտամունքի վայրը, ըստ երևույթին, եղել է Հվ–արմ. Հայաստանի Անգեղ գվո–ը, որի կուսակալ է նշանակվել Տ. Ա., սրանից էլ ծագել է իշխան. տոհմանունը՝ Անգեղ տուն: Տորքի «Անգեղյա» մակդիրը նշանակում է Անգեղի սերունդ, Անգեղյան: Տ. Ա–ի մասին պատումը մշակել է Դազարոս Աղայանը:

ՏՈՐՔՎԵՄԱԴԱ, ***Տորկեմադա*** (Torquemada), Թոմաս դե (մոտ 1420–1498), ինկվիզիցիայի ղեկ. Իսպանիայում: Մահմեդականներին և հրեաներին հետապնդելու նախաձեռնողն էր (1492–ին հրեաները վտարվել են Իսպանիայից):

ՏՈՐՖ, այրվող օգտ. հանածո. առաջանում է ճահճ. բույսերի բնական չորացման և առատ խոնավության ու օդի դժվարացած ներհոսքի պայմաններում ոչ լրիվ տրոհման հետևանքով: Տ–ի ոչ մեծ հանքավայրեր կան ՀՀ Լոռու և Գեղարքունիքի մարզերում:

ՏՈՔՍԻԿՈԶՆԵՐ ՀՂԻՆԵՐԻ, կանանց հիվանդություններ՝ օրգանիզմում պտղաձվի զարգացման ընթացքում: Առաջանում է հղիության կամ ծննդաբերության (հազվադեպ) ժամանակ և, որպես կանոն, վերանում է դրանց ավարտից հետո: Տարբերում են հղիության վաղ (փսխումներ, անզուսպ փսխումներ, թքահոսություն) և ուշ (հղիության 2–րդ կեսին առաջացող) տոքսիկոզներ (հղիների ջրգողություն, նեֆրոպաթիա, նախաէկլամպսիա, էկլամպսիա):

ՏՈՔՍԻԿՈՄԱՆԻԱ (< հուն. toxikon – թույն և ...***մանիա***), հարբեցություն և ժամանակավոր լավազգացություն (էյֆորիա) առաջացնող տարբեր նյութերի ընդունման հակումով բնորոշվող հիվանդությունների ընդհ. անվանումը: Տ. ընդգրկում է տարբեր բուժ. պատրաստուկների, այդ թվում՝ թմրանյութերի (թմրամոլություն), ալկոհոլի (ալկոհոլամոլություն), հալուցինածին, կենցաղ. քիմիայի միջոցների չարաշահումը:

ՏՈՔՍԻՆՆԵՐ, մանրէային, բուս. կամ կենդ. ծագման (հաճախ՝ սպիտակուց. բնույթի) միացություններ, որոնք մարդու կամ կենդանիների օրգանիզմ թափանցելիս կարող են հիվանդությունների կամ մահվան պատճառ դառնալ:

ՏՈՔՍՈՊԼԱԶՄՈԶ, մարդու և կենդանիների ինվազիոն հիվանդություն. հարուցիչները տոքսոպլազմներն են: Բնորոշվում է ավշագեղձերի, աչքերի, գլխուղեղի նևի ախտահարումներով: Մարդը հաճախ վարակվում է շներից ու կատուներից: Հնարավոր է ներարգանդ. վարակումը: Հաճախ ընթանում է գաղտնի:

ՏՊԱԶԵՎ, ***տպագրական կաղապար***, մակերևույթ, որի վրա ձևավորում են տպագրանյութի տարրերը և օգտագործում բազմակի տպագրության համար: Տ–ի վրա տպագրվող և չտպագրվող տարրերի փոխդասավորվածությունը կախված է տպագրության եղանակից: Լինում են խոր, հարթ և բարձր տպագրությունների, միագույն (սև–սպիտակ) ու գունավոր (4 գույնի բաժանված) պատկերների տպագրության և այլ Տ–եր:

ՏՄՈՆԳԱ, բանտու խմբի ժողդ. Մոզամբիկում (2,6 մլն, 2001) և ՀԱՀ–ում (1,2 մլն): Լեզուն՝ տսոնգա: Հավատացյալների մեծ մասը քրիստոնյա (կաթոլիկ) է, մի մասը պահպանում է ավանդ. հավատալիքները:

ՏՎԱՆԱ, (ինքնանվանումը՝ չուանամ, բեչուաններ), բանտու խմբի ժողդ, Բոտսվանայի հիմն. բնակչությունը (1,1 մլն, 2010): Ապրում են նաև ՀԱՀ–ում (3,1 մլն, 2001), Զիմբաբվեում (100 հզ.) և Նամիբիայում (15 հզ.): Լեզուն՝ տսվանա: Հավատացյալները հիմնականում քրիստոնյա են, մի մասը պահպանում է ավանդ. հավատալիքները:

ՏՎԱՐԱԵՂՅԻ, ճարտ. հուշարձան ՀՀ Տավուշի մարզում՝ Կողբ գ–ից 4 *կմ* հվ–արմ.՝ նույնանուն գյուղատեղիի մոտակայքում:

Փայտածածկ եկեղեցին եռանավ դահլիճ էր՝ 2 շարք 3-ական մույթերով բաժանված անհավասար նավերի: Պահպանվել են արլ. պատը (խորանի գմբեթարդի զգալի մասով), պատերի մնացորդներ: Ըստ հորինվածքի որոշ տարրերի՝ եկեղեցին կառուցվել է VI դ–ից առաջ:

ՏՎԱՐԱԾԱՏԱՓ, **Տուարաձոյ տափ**, գվո Տուրուբերան նինգ–ում: Ենթադրվում է, որ ուրարտ. սեպագիր արձանագրություններում հիշատակվող Տուարածինի խուրին է: VII դ–ի «Աշխարհացոյց»–ում մատնանշվում է Դասնավորք, Դալաո, Վարաժնունիք և Հարք գվո–ների միջև: Տ–ի մասին աղբյուրներում այլ տեղեկություններ չեն հանդիպում: Ուսումնասիրողները նույնացնում են հետագա Կարայազի դաշտին:

ՏՎԱՐԴՈՎՍԿԻ Ալեքսանդր Տրիֆոնովիչ (1910–1971), ռուս բանաստեղծ: 1950–54 և 1959–71–ին՝ ԽՍՀՄ ԳՄ վարչության քարտուղար: Հեղինակ է «Երկիր Սուրա–վիա» (1936), «Վասիլի Տյորկին» (1941–45, հայ.՝ 1953), «Հեռաստանից հեռաստան» (1953–60, հայ.՝ 1961), «Ճամփեզրի տունը» (1946, հայ.՝ 1962), «Տյորկինը այն աշխարհում» (երգիծ., 1963), «Հիշողության իրավունքով» (հրտ.՝ 1987) և այլ պոեմների, խոհաքնար. բանաստեղծությունների ժող–ների:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1946, 1947, 1971):

ՏՎԵՆ (Twain) Մարկ (Կլեմենս Սեմյուել Լենգհոռն, 1835–1910), ամերիկացի գրող: Եղել է լոցման, ոսկեխույզ, լրագրող: Հեղինակ է «Կոփվածները» (1872), «Հին ու նոր ակնարկներ» (1875) պատմվածքների ու ակնարկների ժող–ների, «Թոմ Սոյերի արկածները» (1876, հայ.՝ 1931), «Հեքլբերի Ֆիննի արկածները» (1824, հայ.՝ 1934) զավեշտ. և մարդասիր. վեպերի, «Կյանքը Միսիսիպիի վրա» (1883) քնարական–սագր. գրքի, «Արքայազնը և աղքատը» (1882, հայ.՝ «Իշխանն ու աղքատը», 1893) վիպակի, «Քոնեքթիքութցի Յանկին Արթուր թագավորի արքունիքում» (1889, հայ.՝ 1970) և այլ պատմավեպերի, «Ամերիկացի հավակնորդը» (1892), «Խորհրդավոր անծանոթը» (հրտ.՝ 1916) գործերի: Հայ. հրատարակվել են նաև «Մահվան օղակը» (1913), «Նավապետ Ստրոմֆիլդի ճանապարհորդությունը դեպի երկինք» (1936), «Իմ ժամացույցը» (1962) գործերը:

ՏՎԵՐ (1931–90–ին՝ Կալինին), ք. ՌԴ–ում, համանուն մարզի վարչ. կենտրոնը, Նվինգստո Վոլգայի ափին: Բն.՝ 409 հզ. (2009): Երկթեղ. կայարան է: Հիմնադրվել է XII դ–ում, 1–ին անգամ հիշատակվել է 1209–ին:

ՏՎԵՐԻ ՄԱՐԶ, վտմ ՌԴ Կենտր. դաշն. օկրուգում: Տարածքը՝ 84,2 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,4 մլն (2009): Ունի 36 շրջան, 23 քաղաք, 28 քտա: Վարչ. կենտրոնը՝ ***Տվեր***: Կազմավորվել է 1935–ին (մինչև 1990–ը՝ Կալինինի մարզ): Գլխ. գետը՝ ***Վոլգա***: Կան շատ լճեր:

ՏՎԻՐՏԿՈ I (Tvrtko, մոտ 1338—1391), Բոսնիայի թագավոր՝ 1377–ից՝ Կոտրոմանիչների հարստությունից: Կոսովոյի ճակատամարտի (1389) մասնակից: Բոսնիային է միացրել սերբ. և խորվաթ. հողերի մի մասը:

ՏՏ (Տուլայի Տոկարևի), 1930–ին ռուս գինագործ Ֆ. Վ. Տոկարևի (1871–1968) մշակած (1953–ին նորացված) նմուշի Տուլայում արտադրված ատրճանակ. տրամաչափը՝ 7,62 *մմ*, պահեստատուփը՝ 8–փամփուշտանի: Խորհրդ. բանակի սպառազինության մեջ էր մինչև 1950–ական թթ–ի սկիզբը:

ՏՐԱԴԵՍԿԱՆՑԻԱ (Tradescantia), **բամբասանք**, կոմելինազգիների ընտանիքի բազմամյա, ուղղաձիգ կամ փռված ցողուններով խոտաբույսերի ցեղ: Կոչվել է ի պատիվ բուսաբան Ջոն Տրադեսկանտի (1570–1638): Հայտնի է Տ–ի շուրջ 60 տեսակ՝ Ամերիկայի մերձարևադարձ. և արևադարձ. շրջաններում: Տ–ի բազմաթիվ տեսակներ մշակվում են նաև տանը, ծաղկանոցներում՝ որպես գեղազարդիչներ:


ՏՐԱԵՏՏԱ (Traetta) Տոմազո (1727–1779), իտալացի կոմպոզիտոր: 1768–76–ին՝ պալատ. կապելմայստեր Ս. Պետերբուրգում: Զևափոխելով և նորացնելով օպերա–սերիայի սկզբունքները՝ նախապատրաստել է Ք. Վ. Գլյուկի բարեփոխումը օպերայում: Հեղինակ է «Իփիգենիան Տավրիդայում» (1763), «Անտիգոնե» (1772) և այլ օպերաների, օրատորիայի, մեսսաների և այլ գործերի:

ՏՐԱԼ (անգլ.՝ trawl), 1. **Տ. ձկնորսական**, ձկնորսության համար նախատեսված կոնաձև ցանցավոր պարկ, որը պողպատե ճոպաններով քարշակվում են ծով. նավերով: 2. **Տ. ջրագրական**, ստորջրյա խոչընդոտների հայտնաբերման սարք: Խոչընդոտին դիպչելիս Տ–ում միանում է ինքնաշխատ մեխանիզմը, և նրա վրա տեղակայվում է նշաձող: 3. **Տ. ռազմական**, նավերի, տանկերի, ուղղաթիռների հակաական. միջոց, որը կիրառվում է ականների հայտնաբերման և ոչնչացման համար:

ՏՐԱԽՈՄԱ (նոր լատ.՝ trachoma, < հին հուն. trachos – խորդուբորդ), աչքի քրոնիկ. վիրուս. հիվանդություն. բնորոշվում է աչքի շաղկապենու կարմրությամբ, հաստացմամբ, շճային հատիկների (պատճուկներ) առաջացմամբ, որոնք անընդհատ քայքայվում ու սպիանում են: Չբուժվելու դեպքում հանգեցնում է պաննուսի (եղջրաթաղանթի տարածուն մթագնում՝ բջջ. ինֆիլտրացիայով և նրա մեջ արյունատար անոթների ներաճմամբ), եղջրաթաղանթի խոցոտման, կոպերի ներշրջման, կուրության: Վարակվում են անմիջական շփման դեպքում, սրբիչների, թաշկինակների, բարձի միջոցով:

ՏՐԱԿՏԱՏ (լատ.՝ Tractatus – քննարկում), 1. **քննախոսություն**, որևէ առանձին հարցի կամ խնդրի, հատուկ թեմայի նվիրված գիտ. երկ: 2. Դաշնագիր, միջազգ. պայմանագրի, համաձայնագրի տեսակ:

ՏՐԱԿՏՐԻՍ (նոր լատ.՝ tractris, < լատ. tractus – ձգված), հարթ տրասցեդենտ կոր, որի համար շոշափողի MP հատվածի երկյունը՝ M շոշափման կետից մինչև տվյալ ուղղի (առանցքի) P հատման կետը, հաստատուն մեծություն է (նկ.):



ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գիտ–յուն ապացուցման և հերքման միջոցների մասին, գիտ. տեսությունների համախումբ, որոնցից յուրաքանչյուրում դիտարկվում են ապացուցման և հերքման որոշակի միջոցներ: Տ–յան հիմնադիր է համարվում ***Արիստոտելը***: Տարբերում են ավանդ. ձևական Տ., ինդուկտիվ և դեդուկտիվ Տ., իսկ վերջինիս մեջ առանձնացվում են դասական, ինտուիցիոնիստ., կառուցող., մոդալ և այլ Տ–ներ: Ավանդ. ձևական Տ. ուսումնասիրում է մտածողության հիմն. ձևերը (հասկացություն, դատողություն, մտահանգում): Ձևական տրամաբ. համակարգի հիմքում մտածողության հիմն. օրենքներն են (նույնության, հակասության, երրորդի բացառման, բավարար հիմունքի օրենքները), որոնք ապահովում են մտածողության որոշակիությունը, անհակասականությունը, հիմնավորվածությունը: Այս բոլոր տեսությունների ընդհանրությունը ձգտում է իմի բերել դատողությունների այն միջոցները, որոնք ճշմարիտ կշռադատություն–նախադրյալներից հանգեցնում են ճշմարիտ կշռադատություն–հետևանքների: Գիտատեխ. առաջընթացի արագացման գործընթացում հատուկ դեր ունի Տ–յան կցումը հաշվող. մաթ–ին, լեզվաբ–յանը, ինֆորմատիկային ևն: Տես նաև ***Մաթեմատիկական տրամաբանություն***:

ՏՐԱՄԱԳԻԾ շրջանագծի, ուղղի հատված, որն իրար է միացնում շրջանագծի 2 կետ և անցնում նրա կենտրոնով:

ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ընդհ. հոգեկան վիճակ, որը որոշակի ժամանակահատվածում երանգավորում է մարդու հոգեկան ապրումները և վարքը: Տ–յան ոլորտը միասեռ չէ. այն տարածվում է մարդու չտարանջատված կենս. ընդհ. ապրումներից (Տ–յան «վերելք» կամ «անկում») մինչև հստակ արտահայտված այնպիսի ձևեր, ինչպիսիք են, օր., ձանձրույթը, վախը, հուսահատությունը կամ ընդհակառակը՝ ուրախությունը, հույսը, հափշտակվածությունը:

ՏՐԱՄԱՉԱՓ, 1. հրաձգ. զենքի փողի անցքի նաև արկի (փամփուշտի) տրամագիծը՝ արտահայտված դյույմերով, գծերով (0,1 դյույմ), *մմ*–երով: Հրազեն. զենքի հզորությունը բնորոշող հիմն. մեծություններից է: 2. Ավիացիոն ռումբի զանգվածը՝ արտահայտված *կգ*–ներով: 3. Շինվածքների մասերի չափերը, ձևը և փոխդասավորությունն ստուգելու անսանդղակ չափիչ գործիք: Տարբերում են կոշտ (օր.՝ անցքերի ստուգման երկկողմանի սահման. Տ–խցաններ) և անհրաժեշտ չափերին հարմարեցվող Տ–ներ, նաև պրոֆիլ. Տ–շաբլոններ: 4. Գլոցման արտադր–յան մեջ՝ գլոցվածք. 2 կցորդված գրտնակների կտրուքներով առաջացած բացվածքի պրոֆիլը, որի միջով անցկացնում են շրջասեղմվող գլոցամետաղը՝ դրան պահանջվող ձև տալու համար:

ՏՐԱՅԱՆՈՍ (Traianus, 53–117), Հռոմի կայսր՝ 98–ից՝ ***Անտոնիոսների*** հարստությունից: Նվաճող. պատերազմներով առավելագույնս ընդարձակել է կայսրության սահմանները: Գրավել է Դակիան (մոտ 106), Արաբիան (106), Մեծ Հայքը (114), Միջագետքը (115): Հաջորդ կայսրը՝ Ադրիանոսը, չկարողանալով պահպանել հռոմ. գերիշխանությունը, ընդունել է (117) Մեծ Հայքի անկախությունը և թագավոր ճանաչել ***Վաղարշ Ա***–ին:

ՏՐԱՅԿՈՎ Գեորգի (1898–1975), բուլղար պետ. գործիչ: 1964–71–ին՝ Բուլղարիայի Ա.Ժ նախագահության նախագահ, 1971–72–ին՝ Ա.Ժ նախագահ, 1972–ից՝ Պետ. խորհրդի նախագահի 1–ին տեղակալ, Հայրեն. ճակատի Ազգ. խորհրդի (1974–ից՝ պատվ.) նախագահ:

ՏՐԱՆԶԻՍՏՈՐ [< անգլ. tran (sfer) – փոխանցել և ***rեzիստոր***], էլ. տատանումների գեներացման ուժեղացման և փոխակերպման կիսահաղորդչ. սարք: Պատրաստված է միաբյուրեղ. կիսահաղորդչի (օր.՝ Si) հիմքով, որը պարունա–

կում է տարբեր էլեկտրոն. (ո) և խոռոչ. (p) հաղորդականությամբ 3–ից ոչ պակաս տիրույթներ: Հայտնաբերել են ամերիկացիներ Ու. *Շոկլին*, Ու. *Բրատեյնը*, Ջ. *Բարդինը* 1948–ին: Ըստ ֆիզ. կառուցվածքի և հոսանքով կառավարման մեխանիզմի՝ տարբերում են երկբևեռ և միաբևեռ (հաճախ անվանում են դաշտ. Տ.) Տ–ներ: Առաջիններում, որոնք պարունակում են 2 կամ ավելի էլեկտրոնախոռոչ. անցումներ, լիցքակիրներն ինչպես էլեկտրոններն են, այնպես էլ խոռոչները, երկրորդներում՝ կամ էլեկտրոնները, կ՚ամ խոռոչները: «Տ.» եզրույթը հաճախ օգտագործում են կիսահաղորդչ. սարքերով ռադիոհաղորդման դյուրակիր ընդունիչների համար:

ՏՐԱՆԿՎԻԼԻԶԱՏՈՐՆԵՐ (լատ.՝ tranquillo – հանգստացնել), թույլ հակափսիխոզ. դեղանյութեր, որոնք նվազեցնում են լարվածության, վախի ու տագնապի զգացողությունները:

ՏՐԱՆՍ..., 1. (լատ.՝ trans – միջով, վրայով, անդր...), բարդ բառերի մաս. ցույց է տալիս՝ ա. որևէ տարածքով շարժում, տարածքի հատում (օր.՝ անդրատլանտյան), բ. ինչ–որ բանի հետևելը, ինչ–որ բանից այն կողմ լինելը (օր.՝ անդրալպյան), գ. նշանակում կամ հաղորդում ինչ–որ բանի միջոցով (օր.՝ տրանսլիտերացիա-գրադարձություն): 2. **Տրանս** (ֆրանս.՝ transe – թմրություն), գիտակցության մթագնած վիճակ: «Տ.» նշանակում է նաև օտարվածության, էքստազի, պայծառատեսության և այլ վիճակներ:

ՏՐԱՆՍԱԿՏԻՆԻԴՆԵՐ, անդրակտինիդներ, արհեստականորեն ստացված ճառագայթակտիվ Z = 104 և ավելի կարգաթվերով գերծանր քիմ. տարրեր, պարբեր. համակարգում գտնվում են ակտինիդներից հետո:

ՏՐԱՆՍԳՐԵՍԻԱ (< լատ. transgressio – անցում), **առաջընթաց**, ծովի ներխուժումը ցամաք՝ երկրակեղևի մայրցամաք. մասի իջեցման հետևանքով: Հայտնի է ամբողջ երկրբ. պատմության ընթացքում: Տ. հակադրվում է ռեգրեսիային (ծովի նահանջ):

ՏՐԱՆՍԴՈՒԿՑԻԱ (լատ.՝ transductio – փոխադրում), գենետիկ. նյութի (ԴՆԹ–ի հատվածի) փոխադրումը բակտերիոֆագով՝ մի բակտերիային բջջից մյուսին, որը հանգեցնում է բջջի ժառանգ. հատկությունների փոփոխության: Փոխադրված գենետիկ. նյութը կարող է մնալ ֆագի ԴՆԹ–ի կազմում կամ ներառվել բակտերիայի ԴՆԹ–ում:

ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱ (Transilvania), պատմ. մարզ Ռումինիայի հս–ում: I դ–ում Տ–ի տարածքը կազմել է գետա–դակերի պետության հիմն. մասը: II դ–ի սկզբից մինչև 271–ը ենթարկվել է Հռոմին, XI–XII դդ–ում՝ Հունգարիայի թագավորներին, 1541–ից՝ թուրք սուլթանին, Ավստրո–Հունգարիայի միապետության ստեղծումից (1867) հետո եղել է Հունգ. թագավորության կազմի մեջ: 1920–ի Տրիանոնի հաշտության պայմանագրով Տ. տրվել է Ռումինիային: 1940–ին Տ–ի հս. մասը միացվել է Հունգարիային: *Փարիզի հաշտության պայմանագրերով* (1947) վերականգնվել է ռումինա–հունգ. սահմանը՝ 1938–ի հունվ. 1–ի դրությամբ:

ՏՐԱՆՍԼՅԱՑԻԱ (լատ.՝ translatio – հաղորդում), կենսբ–յան մեջ՝ սպիտակուցների սինթեզը կենդանի բջջում՝ ռիբոսոմների վրա: Գենետիկ. տեղեկույթի իրացման 2–րդ փուլը (*տրանսկրիպցիայից* հետո), որի ընթացքում տեղեկատվ. կամ մատրիցային նուկլեոտիդների հաջորդականությունը «փոխանցվում է» սինթեզվող սպիտակուցի ամինաթթվային հաջորդականությանը:

ՏՐԱՆԼՈԿԱՑԻԱ (< *ֆրանս.*... և լատ.՝ locatio – տեղավորել), 2 կամ ավելի քրոմոսոմների տեղերի փոխանակումը, ինչպես նաև քրոմոսոմի հատվածի տեղափոխությունը նույն քրոմոսոմի մեկ այլ տեղ: Քրոմոսոմ. վերակառուցման (մուտացիայի) տիպ է:

ՏՐԱՆՄԿՐԻՊՑԻԱ (կենսբ.), ՌՆԹ մոլ–ի կենսասինթեզը ԴՆԹ–ի համապատասխան հատվածներում: Բջջում գենետիկ. տեղեկույթի իրացման առաջին փուլն է, որի արդյունքում ԴՆԹ–ի նուկլեոտիդների հաջորդականությունը «արտագրվում է» ՌՆԹ–ի նուկլեոտիդների հաջորդականության մեջ: Հնարավոր է նաև հակադարձ Տ.՝ ԴՆԹ–ի սինթեզը՝ որպես մատրիցներ օգտագործելով ՌՆԹ–ն: Տես նաև *Ռևերսովիրուսներ*:

ՏՐԱՆՍՊԻՐԱՑՈՒՄ (< *ֆրանս.*... և լատ.՝ spiro – շնչել, արտաշնչել), ջրի գոլորշիացումը բույսերի մակերևույթից: Տ–ման հիմն. օրգանը տերևն է: Տ–ման շնորհիվ բույսերում առաջանում է ջրի և նրա մեջ լուծված հանք. աղերի հոսք՝ արմատներից դեպի տերևներ: Տ–վող ջրի ծախսը հսկայական է: Այսպես՝ ցորենի 1 *հա* ցանքից վեգետացիայի շրջանում գոլորշիանում է 2 մլն *լ* ջուր, կաղամբի ցանքից՝ 8 մլն:

ՏՐԱՆՍՊՈՐՏ (լատ.՝ transporto – տեղափոխել), նյութ. արտադր–յան ճյուղ. իրականացնում է մարդկանց և բեռների փոխադրումը: Տարբերում են վերգետնյա (երկթղ., ավտոմոբիլ. ու խողովակաշար.), ջրային (ծով. ու գետ.) և օդային Տ.: Ստորաբաժանվում է ընդհ. օգտագործման (սպասարկում է շրջանառության ոլորտը և բնակչությանը), ոչ ընդհ. օգտագործման (հումքի, կիսաֆաբրիկատների, պատրաստի իրերի ենի ու ներարտադր. տեղափոխում) և անձն. օգտագործման Տ–ի: Առանձնացնում են նաև ուղևորատար և բեռնատար Տ.:

ՏՐԱՆՍՍԵՔՍՈՒԱԼՈՒԹՅՈՒՆ, անդրասեքսուալություն, սեռ. ինքնանույնականացման (աուտոիդենտիֆիկացում) խանգարում, որը դրսևորվում է հակառակ սեռին իր պատկանելության գիտակցումով, չնայած սեռ. գեղձերի (գենետիկ. սեռին համապատասխանող), միզասեռ. ապարատի և երկրորդ. սեռ. հատկանիշների ճիշտ ձևավորմանը:

ՏՐԱՆՍՑԵՆԴԵՆՏ ԹԻՎ, ամբողջ գործակիցներով ոչ մի հանրահաշվ. հավասարման չբավարարող թիվ: Տ. թ. է π = 3,14159...., 1–ով և 0–ներով չպատկերվող որևէ ամբողջ թվի տասնորդական լոգարիթմը, e = 2,71828 ... թիվը նև:

ՏՐԱՆՑԵՆԴԵՆՏ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ, անալիտիկ ֆունկցիաներ, որոնք հանրահաշվական չեն, օր.՝ *ցուցչային ֆունկցիան, եռանկյունաչափական ֆունկցիան*:

ՏՐԱՆՑԵՆԴԵՆՏԱԼ (լատ.՝ transcendentes, սեռ. հոլ. transcentendis – սահմանից այն կողմ), փիլ. հասկացություն. նշանակում է կեցության մետաֆիզիկորեն մտահասանելի վիճակներին՝ տրանսցենդենտալիաներին վերաբերող: Միջնադար. սխոլաստիկ. փիլ–յան առավել ընդհ. հասկացություններ են, արտահայտում են ինքնին կեցությունն ու նրա էական հատկությունները: Տ–ները դասվում էին փիլ. կատեգորիաներից բարձր. նկատի ունեն մետաֆիզ–մտահայեցող. ճանաչողության առարկան՝ վերաց. կեցությունն ու նրա նույնքան վերաց. բնութագրությունները: Ի. Կանտը «Տ.» է անվանել իր իմացաբանա–տրամաբ. ուսմունքը: Նորկանտականության Մարբուրգյան դպրոցը բնութագրվում է որպես Տ–տրամաբ.: «Տ.» հասկացությունն իր ֆենոմենոլոգիայում գործածել է Է. *Հուսեռլը*:

ՏՐԱՆՈՒՐԱՆԱՅԻՆ ՏԱՐՐԵՐ, անդրուրանային տարրեր, տարրերի պարբեր. համակարգում *ուրանին* հաջորդող (ատոմ. համարը՝ Z > 93) քիմ. տարրեր: Բոլոր Տ. տ. սինթեզվել են միջուկ. ռեակցիաներով (Np և Pu բնության մեջ հայտնաբերվել են միկրոքանակներով): Ճառագայթաակտիվ են, ատոմ. համարի՝ Z–ի մեծացմանը զուգընթաց կիսաքայքայման պարբերությունը կտրուկ նվազում է (^{244}Pu–ի համար՝ 8 · 10^7 տարի, իսկ Z > 106–ի համար՝ մինչև միկրով.–ներ):

ՏՐԱՆՍՖԵՐԱԶՆԵՐ, ֆերմիոնների դաս. կատալիզում են ատոմների խմբի փոխադրումը մեկ նյութի (դոնոր) մոլ–ներից մյուսի (ակցեպտոր) մոլ–ների վրա: Տ–ով կենդանի բջիջներում իրականացվում են ալկիլացման, ֆոսֆորիլացման, սպիտակուցների, նուկլեինաթթուների սինթեզման կենսընթացներ:

ՏՐԱՆՍՖԵՐԻՆՆԵՐ, բարդ սպիտակուցներ (գլիկոպրոտեիններ), որոնք օրգանիզմում փոխադրում են եռավալենտ երկաթի իոններ: Հայտնաբերվել են արյան պլազմայում, կաթում, ձվի սպիտակուցում: Տ–ի անբավարարությունը հանգեցնում է երկաթի փոխանակության խանգարման:

ՏՐԱՆՍՖԵՐՏ (ֆրանս.՝ transfert, < լատ. transfero – տեղափոխել, տեղաշարժել), 1. օտարերկրյա արժույթի կամ ոսկու փոխանցումը մի երկրից մյուսը: 2. Մանավանակա արժեթղթերի տնօրինման իրավունքի փոխանցումը:

ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐ (լատ.՝ transformare – փոխակերպել), Էներգիայի էական հատկությունների փոխակերպման սարք (օր.՝ էլ. Տ., հիդրո–Տ.):

ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱ (գենետիկ.), բակտեր. բջջի ժառանգ. հատկանիշների փոփոխություններ՝ նրա մեջ օտարածին ԴՆԹ թափանցելիս: Տ–ի հայտնագործման շնորհիվ պարզվել է, որ ԴՆԹ–ն ժառանգականության նյութ. կրողն է: Տ. հնարավոր է նաև բարձրակարգ օրգանիզմների բջիջներում:

ՏՐԱՆՍՖՈՐՄԻՉՄ (լատ.՝ transformere – փոխակերպել), բուս. և կենդ. օրգանիզմների փոփոխության և փոխակերպման վերաբերյալ պատկերացումների համակարգ, նախորդել է Էվոլյուցիոն ուսմունքին: «Տ.» եզրույթն օգտագործվում է առավելապես կենդանի օրգանիզմի զարգացման վերաբերյալ մինչդարվինյան շրջանի փիլ–ների և բնագետների (Ժ. Լ. Բյուֆոն, Է. Ժոֆրուա, Սենտ–Իլեր և ուր.) հայացքները բնութագրելու համար:

ՏՐԱՇՈՒՏԻՆ Իվան Յակովլևիչ (1906–1986), փոխադր. դիզելների ռուս կոնստրուկտոր: Սոց. աշխ. հերոս (1966, 1976): Ճարտարագետ–գնդ. (1945): Ղեկավարել է S–34 տանկի, ԴԷՏ–250 տրակտորի, «Խարկով–չանկա» արկտիկ. բևեռագնացի շարժիչների ստեղծման աշխ–ները: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1974):

ՏՐԱՈՐԵ (Traoré) Մուսա (ծ. 1936), Մալիի նախագահ՝ 1968–91–ին, միաժամա-

նակ՝ ՆԳ և անվտանգության (1978–79), պաշտպ–յան (1978–86), Մալիի ազգ. պաշտպ–յան (1988–91)՝նախարար, բանակի գեն.: Մալի ժողդ–ի դեմոկրատ. միության կուս–յան գլխ. քարտուղար՝ 1979–91-ին: 1968–79-ին՝ Ազգ. ազատագրության ռազմ. կոմիտեի նախագահ, կառ–յան և պետության ղեկ.: Իշխանությունից հեռացվել է 1991-ին՝ պետ. հեղաշրջման հետևանքով: Դատապարտվել է մահվան, որը փոխարինվել է ցմահ բանտարկության: 2002-ին ներում է շնորհվել:

ՏՐԱՊԵԶՆԻԿՈՎ Նիկոլայ Նիկոլաևիչ (1928–2001), ռուս. վիրաբույժ, ուռուցքաբան: ՌԲԳԱ (1978) և ՌԳԱ (1997) ակադ.: Աշխ–ները վերաբերում են չարորակ ուռուցքներին (սարկոմա, մաշկի մելանոմա ևն), արյան տեղային շրջանառությանը: ՌԴ Պետ. մրց. (1999):

ՏՐԱՊԻԶՈՆ (թուրք.՝ Trabzon, հուն.՝ Trapczous), **Տրապեզունդ, Տրապեզա**, ք–նվինզստ Թուրքիայի հս–արլ–ում՝ Սև ծովի ափին՝ Կոլաթ–դաղի ստորոտին, համանուն իլի կենտրոնը: Բն.՝ 426, 9 հզ. (2012): Հիմնադրել են հույները մ. թ. ա. VIII կամ VII դ–ում: 1204–1461-ին եղել է Տ–ի կայսրության մայրաքաղաքը: Հայերը Տ–ում հաստատվել են հիմնականում VII դ–ից: 1895–96-ի հայկ. ջարդերի ժամանակ Տ–ի բազմաթիվ հայեր կոտորվել են, զգալի մասը գաղթել է Սոչի, Գուդաութա, Բաթում, Ղրիմ և այլուր: ԱՀՊ–ի նախօրեին Տ–ում կար մոտ 15 հզ. հայ: 1915-ին՝ Մեծ եղեռնի ժամանակ, նրանց մի մասը կոտորվել է գաղթի ճանապարհին, իսկ քաղաքում մնացածները նավերով դուրս են բերվել ծով և ջրախեղդ արվել:

«ՏՐԱՊԻԶՈՆԻ ԱՎԵՏԱՐԱՆ», XI դ–ի 1-ին կեսի պատկերազարդ, տոն. ձեռագիր մատյան (գրչության վայրը, գրիչը, ծաղկողը հայտնի չեն, ՎնտՄՄ մտնդ., ձեռ. № 1400): 1803-ին Իգնատիոս Փափազյանը Վենետիկ է բերել Տրապիզոնից (այստեղից էլ՝ անվանումը): Ձեռագիրը Սբ Ղազար վանքի ամենամեծ մատյանն է (47,5 x 36,5 *սմ*): Պահպանվել են պատկերազարդ 10 խորան, 4 Ավետարանիչների նկարները, անվանաթերթեր, 7 թեմատիկ տերուն. տեսարաններ:

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 1918, անջատ հաշտության բանակցություններ, մի կողմից՝ Անդրկովկասի Սեյմի, մյուս կողմից՝ Թուրքիայի պատվիրակությունների միջև մարտի 14–ապրիլի 14-ին: Անդրկովկասյան պատվիրակությունն ամբողջությամբ ընդունել է Բրեստի հաշտության պայմանագիրը, որը սակայն արդեն չէր բավարարում թուրքերին, որոնք մտադիր էին ռազմ. գործողությունները փոխադրել Անդրկովկասի խորքերը: Սեյմն ընդհատել է բանակցությունները և պատվիրակությանը հետ կանչել Տրապիզոնից՝ պաշտոնապես պատերազմի մեջ մտնելով Թուրքիայի հետ, որը շուտով ավարտվելու էր Անդրկովկասի դաշնային (հռչակվել է 1918-ի ապրիլի 22-ին) զորքերի պարտությամբ և ավելի ծանր հաշտության (տես *Բաթումի պայմանագիր 1918*) ստորագրմամբ:

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԲԱՐԲԱՌ, հայ–ի «կը» ճյուղի բարբառ: Խոսվել է Տրապիզոնն, Գյումյուշխանե և Կիրասոն ք–ներում: Ունի երկաստիճան խլազուրկ (բ, փ) բաղաձայն. համակարգ:

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, պահպանված առաջին ձեռագիրը Սբ Զարխափան վանքում 1422-ին Ղազար Ղրիմեցու ընդօրինակած «Վարք հարանցն» է (Մտնդ., ձեռ. № 3874): Մինչև 1455-ը Ղազար Ղրիմեցին ու նրա աշակերտ Հակոբն ընդօրինակել են բազմաթիվ ձեռագրեր: Հիշատակվում են նաև կազմարար Աբրահամը (1467–68), գրիչներ Ավետիքը (1467, Գանձարան), Նիկողայոսը (1472, Ավետարան), XVI–XVII դդ–ից՝ Հովհաննեսը, Սրապիոնը, Առաքելը, Սարգիսը, Ամիրաս Երզնկացին, Կիրակոսը, Միքայելը և ուր.: Տ. գ. կ–ում ձեռագրեր ընդօրինակել են մինչև XIX դ–ի սկիզբը (Մտնդ., ձեռ. № 1354, 2884, 6002, 6283, 8901, 10200):

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ, պետություն Փոքր Ասիայի հս–արլ–ում՝ Սև ծովի հվ. ափին (1204–1461): Հիմնադրել են Բյուզանդիայի կայսր Անդրոնիկոս I Կոմնենոսի թոռներ Ալեքսիոսն ու Դավիթը՝ մոր կողմից իրենց ազգական Վրաց Թամար թագուհու օգնությամբ: 1461-ին օսմ. թուրքերը կործանել են Տ. կ. և մտցրել Օսմ. կայսրության կազմի մեջ:

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1916, ԱՀՊ–ի ժամանակ Տրապիզոն ք. գրավելու նպատակով ռուս. Կովկաս. բանակի և Սևծով. նավատորմի համատեղ հարձակող. գործողությունը թուրք. 3–րդ բանակի դեմ: Տրապիզոնի գրոհն սկսվել է ապրիլի 1(14)-ին: Կարաղերե գետի մոտ ռուս. զորքերը ճեղքել են թուրք. ռազմաճակատը և ապրիլի 5(18)-ին գրավել Տրապիզոնը:

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՎԻԼԱՅԵԹ, **Տրապիզոնի նահանգ**, **Տրապիզոնի կուսակալություն**, վտմ Օսմ. կայսրությունում՝ պատմ. Պոնտոսի և Խաղտիքի տարածքում՝ Սև ծովի հվ. ափին: Կոչվել է կենտրոնի՝ *Տրապիզոն* ք–ի անունով: Հուն. գաղութացումից (մ. թ. ա. VIII դ.) հետո հիմնադրվել են Տրապիզոն, Ամիսոս (Սամսոն) և այլ ծովափնյա ք–ներ: Մ. թ. ա. II դ–ի վերջին և I դ–ի սկզբին Տ. վ–ի տարածքը մտել է Պոնտոսի թագավորության, մ. թ. ա. 66–ից՝ Հռոմ. և Բյուզ. կայսրությունների, 1204–ից՝ Տրապիզոնի կայսրության, 1461–ից՝ Օսմ. կայսրության կազմի մեջ: Ձևավորվել է Տ. վ., որը գոյատևել է մինչև 1920-ական թթ.: ԱՀՊ–ի նախօրեին Տ. վ–ում կար մոտ 65 հզ. հայ: Նրանց մեծ մասը զոհվել է 1915-ին՝ Մեծ եղեռնի ժամանակ:

ՏՐԱՎԵՐՏԻՆ (իտալ.՝ travertino), **կրաքարային տուֆ**, հանք. աղբյուրների կրաքար. նստվածք: Սովորաբար ունի մակահոսված կառուցվածք և մեծ ծակոտկենություն: Դիմացկուն է, գեղազարդիչ, հեշտ մշակվող: Երբեմն շատ գեղեցիկ է կոտրվածքում և հղկված տեսքով: Տարածված է ՀՀ Արարատի, Լոռու, Սյունիքի, Տավուշի մարզերում և ԼՂՀ Մարտակերտի, Մարտունու շրջաններում:

ՏՐԱՎՄԱՏԻԶՄ, բնակչության առանձին խմբերում (100, 1000 մարդու հաշվով՝ 1 ամսում, տարում) ստացած վնասվածքների ամբողջությունը: Տարբերում են արտադր. (արդ. և գղտ.), կենցաղ., տրանսպորտ., ռազմ. և մարզ. Տ.:

ՏՐԱՎՈԼՏԱ (Travolta) Ջոն (ծ. 1954), ամերիկացի դերասան: 1975–ից նկարահանվում է կինոյում, ճանաչվել է «սրտակեր» և համառ երիտասարդների կերպարներով: Ֆիլմերից են՝ «Քերրի», «Տենդ շաբաթ երեկոյան», «Միայնակ սրտեր», «Ողջ մնալ», «Հին շներ», «Քրեական ընթերցվածք», «Փարիզից՝ սիրով» ևն:

ՏՐԱՈՒԲԵՐԳ Լեոնիդ Զախարովիչ (1902–1990), ռուս. կինոռեժ., սցենարիստ: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1987): Նկարահանել է «Շինել» (1926), «Նոր Բաբելոն» (1929), Մաքսիմի մասին կինոեռերգությունը (1935–39, բոլորը՝ Գ. Մ. *Կոզինցևի* հետ), «Դերասանուհին» (1943), «Քայլում էին զինվորները» (1959), «Ազատ քամի» (1961) և այլ ֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941):

ՏՐԱՈՒԳՈՒՏ (Traugutt) Ռոմուալդ (1826–1864), Լեհաստանի Ազգ. կառ–յան ղեկ–ը [1863-ի հոկտ–1864-ի մարտին (փաստորեն՝ բռնապետ)] 1863–64-ի Լեհ. ապստամբության ժամանակ, գեն.: Մահապատժի է ենթարկվել ցար. իշխանությունների դատավճռով:

ՏՐԱՔԵԱՆՆԵՐ (հուն.՝ tracheia – շնչափող), 1. ցամաք. հողվածոտանիների շնչառության օրգան, ճյուղավորվող օդատար խողովակիկների համակարգ՝ մարմնի մեջ թափանցող և նրա մակերևույթին բացվող շնչաճեղքերով (ստիգմաներ): Որոշ միջատներ կարող են Տ. ուռեցնել օդով՝ փորիկի մկանները կծկելով: 2. Բույսերի Տ–ի մասին տես *Անոթներ* հոդվածում:

ՏՐԱՔԵՈԲԱԿՏԵՐԻԱԶՆԵՐ, բույսերի հիվանդություններ, որոնց հարուցիչները բուսաախտածին բակտերիաներն են: Առավել վնասակար են մորմազգիների բակտեր. թառամումը, լոլիկի բակտեր. քաղցկեղը ևն: Ախտահարվում է անոթ. համակարգը:

ՏՐԱՔԵՈՄԻԿՈԶՆԵՐ, բույսերի հիվանդություններ, որոնց հարուցիչները մակաբույծ սնկերն են: Առավել վնասակար են բամբակենու վիլտը, ցիտրուսայինների մալսեկոն:

ՏՐԱՖԱԼԳԱՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1805, տեղի է ունեցել հոկտ. 21-ին Տրաֆալգար (Trafalgar) հրվանդանի մոտ՝ Իսպանիայի ատլանտ. ափին՝ Կադիս ք–ի մերձակայքում: Անգլ. նավատորմը ծովակալ Հ. Նելսոնի գլխավորությամբ ջախջախել է ծովակալ Պ. Վիլնյովի (P. Villeneuve) ֆրանս–իսպ. նավատորմը:

ՏՐԴԱՏ, զորավար, իշխան, հռոմ. տիրապետության դեմ 164–ի ապստամբության ղեկ.: Հռոմ. զորքերը Ստատիոս Պրիսկոսի հրամանատարությամբ 164-ին ներխուժել են Հայաստան, ընկճել հայկ. զորքերի դիմադրությունը, գրավել և ավերել Արտաշատը, ձերբակալել Բակուր Արշակունուն, որն էլ ապստամբության պատճառ է դարձել: Հռոմեացի զորավար Մարտիոս Վերոսին հաջողվել է ճնշել ապստամբությունը և ձերբակալել Տ–ին: *Մարկոս Ավրելիոս* կայսրի կարգադրությամբ Տ–ին աքսորել են Բրիտանիա:

ՏՐԴԱՏ, X դ–ի 2–րդ կես–XI դ–ի սկզբի ճարտ., քանդ.: Բագրատունիների թագավոր. տան գլխ. ճարտ–ը: Առաջին գործն Արգինայի Կաթողիկե եկեղեցին է (973–977), ապա՝ Կ. Պոլսի Սբ Սոֆիա տաճարի գմբեթի վերականգնումը (989–992): Տ–ի գլուխգործոցն Անիի Մայր տաճարն է: Կառուցել է նաև Անիի Սբ Գրիգոր (Գագկաշեն) եկեղեցին, նրան է վերագրվում Անիի Փրկչի եկեղեցին: Տ. ունեցել է իր դպրոցը, մեծ է ներդրումը միջնադար. հայկ. ճարտ–յան զարգացման, ոճ. ուղղության և հորինվածք. սկզբունքների ձևավորման մեջ:

ՏՐԴԱՏ Ա. (ծ. թ. անհտ–մոտ 75/88), Մեծ Հայքի թագավոր՝ 52–ից: Պարթևաց Արշակունի արքա Վոնոն II–ի որդին, Պարթևստանի թագավոր Վաղարշ I–ի

եղբայրը: 54-ին Տ. Ա հաստատվել է հայկ. գահին, հիմնադրել հայ Արշակունինե-րի արքայատունը: Տ. Ա-ին տապալելու նպատակով հռոմ. զորքերը Դոմետիոս *Կորբուլոնի* հրամանատարությամբ 58-ի գարնանը ներխուժել են Մեծ Հայք: Նե-րոնի հրամանով Կորբուլոնը Տ. Ա-ի հետ ստորագրել է *Հռանդեայի պայմանագիրը* (64), ճանաչել Մեծ Հայքի անկախությու-նը: 65-ին Տ. Ա իր ընտանիքով մեկնել է Հռոմ, որտեղ Ներոնը նրան թագադրել է:

ՏՐԴԱՏ Ա ՈՓԹՄԵՑԻ (ծ. թ. անհտ–764), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 741-ից՝ Վանանդեցի նախարար. տոհմից: Հա-վանաբար եղել է Վանանդի եպս-ը: Կաթողիկոս-պատմիչ Հովհաննես Ե Դրասխանակերտցին նրա մասին վկա-յում է որպես «այր սուրբ եւ պարկեշտ, եւ փայլեալ առաքինութեամբ»:

ՏՐԴԱՏ Բ, Հայոց Արշակունի թագավոր, որն արդի պատմագրության մեջ նույնաց-վում է *Խոսրով Ա* Մեծի հետ:

ՏՐԴԱՏ Բ ԴԱՄՆԱՎՈՐԵՑԻ (ծ. թ. անհտ–767), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 764-ից: Հայրապետ. գործունեության ժամանա-կաշրջանն աչքի է ընկել արաբ ոստիկան Հասանի կազմակերպած խժդժություն-ներով, բռնություններով ու աղետալի վիճակով:

ՏՐԴԱՏ Գ Մեծ (250-ական թթ.–մոտ 330), Հայոց թագավոր՝ 287-ից: Պարսից տերության դեմ Ավրելիանոս կայսրի հաղթ. արշավանքին մասնակցած Տ. Գ ժամանակավորապես (274–276) տիրել է Հայոց գահին: 298-ին Մծբինում կնքված հռոմեա-պարսկ. 40-ամյա խաղաղության պայմանագրով Սասանյաններն ստիպ-ված հրաժարվել են «Հայաստանի մեծ թագավոր» տիտղոսից և ճանաչել Տ. Գ-ի գահակալումը: Տ. Գ-ի օրոք՝ 301-ին քրիս-տոնեությունը Հայաստանում հռչակվել է պետ. կրոն: ՀԱԵ նրան սրբադասել է:

ՏՐԴԱՏ ԿԱՋՄՈՂ, XVII դ-ի քանդակա-զարդող վարպետ, խաչքարեր կազմող: 1653-ի խաչքարը (այժմ՝ Սևանավանքի Սբ Աստվածածին եկեղեցում) քանդա-կազարդել է Քրիստոսի խաչելության, դրախտի տեսարաններով, Տիրամոր, Ադամի և Եվայի, թագակիր անձանց, ավետարանիչներին խորհրդանշող կեն-դանակերպ և այլաբան. պատկերներով, կենդ. ու բուս. զարդամոտիվներով:

ՏՐԴԱՏՅԱՆ Արամ Համազասպի (1919–1986), մանկաբարձ-գինեկոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (1969), պրոֆ. (1970): Աշխ-ները վերաբերում են վիրահատ. գինեկոլոգիայի և մանկաբարձության, կանանց միզասեռ. օրգանների վնասվածքների ու խուղակ-ների կանխման և վիրաբուժ. մեթոդների մշակմանը: ՀԽՍՀ մանկաբարձ-գինեկոլոգ-ների գիտ. ընկ-յան նախագահ (1974–86):

ՏՐԵ, հայկ. հեթանոս. տոմարի 4-րդ ամիսը: Կապվում է *Տիր* աստծու անվան հետ: Տ-ի 1-ը համապատասխանում է նոյեմբ. 9-ին:

ՏՐԵԲԼԻՆԿԱ (Treblinka), ֆաշիստ. համա-կենտրոնացման ճամբարներ Լեհաստա-նում՝ Վարշավայի վոյեվոդության Տրեբ-լինկա կայարանի մոտ: Տ. 1-ում (1941–44, աշխ. ճամբար) զոհվել է մոտ 10 հզ. մարդ, Տ. 2-ում (1942–43, մահվան ճամբար)՝ մոտ 800 հզ. մարդ:

ՏՐԵՂ-ՅՈՒՆԻՈՆՆԵՐԻ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ, Մեծ Բրիտանիայի խո-շորագույն արհմիությունը: Հիմնադրվել է 1868-ին: Կապված է Լեյբորիստ. կուս-յան հետ: Համախմբում է 7 մլն մարդ (2012): Ազատ արհմիությունների միջազգ. հա-մադաշնության անդամ է:

ՏՐԵԶԻՆԻ (Trezzini) Դոմենիկո (մոտ 1670–1734), շվեյցարացի ճարտ.: Վաղ-ռուս. *բարոկկոյի* վարպետ: Կառուցել է Պետրոս I-ի ամառ. պալատը (1710–14), Պետրոպավլովյան ամրոցի տաճարը (1712–33), 12 կոլեգիաների շենքը (այժմ՝ կոլեգիալ համալսարան, 1722–34, բոլորը՝ Ս. Պետերբուրգում):

ՏՐԵԽ, տղամարդու հին ոտնամանի տե-սակ: Պատրաստել են տավարի անմշակ կամ մշակված միակտոր կաշվից, որի եզ-րերը կարել և ոտնաթաթի շուրջ ձգել են բարակ կաշեփոկով: 2010-ին Վայոց ձորի Արենի 1 քարանձավում հայտնաբերվել է 5500 տարվա Տ.:

ՏՐԵՄԱՏՈԴՆԵՐ (Trematoda), **ծծան որ-դեր**, մակաբույծ տափակ որդերի դաս: Մարմինը հաճախ տերևանման է՝ մի քանի *մմ*-ից մինչև 1 *մ*: Հայտնի է ավելի քան 5 հզ. (այլ տվյալներով՝ մոտ 7 հզ.) տեսակ: Զարգացումը՝ տերերի փոփոխ-մամբ, սերունդների հերթագայությամբ, զարգացման մակարուծ. և ազատ ապրող փուլերի հերթափոխությամբ: Հասուն Տ. մակարուծում են մարդու և ողնաշարավոր կենդանիների (առաջացնում են **տրե-մատոդոզներ**), կուսածին սերունդները՝ փափկամարմինների օրգանիզմներում (օր.՝ լյարդի երկծծանը):

ՏՐԵՆԱԺՈՐ (անգլ.՝ train – վարժեցնել, մարզել), **վարժասարք, մարզասարք**, 1. ուսումնավարժ. սարք՝ հմտություններ մշակելու և մեքենայի (մեխանիզմի) կառա-վարման տեխնիկան կատարելագործելու համար: Օգտագործում են օդաչուների և տիեզերագնացների պատրաստման, մե-քենագրության, ավտովարման ուսուցման և այլ նպատակներով: 2. Մարզասարք, որը նախատեսված է մարզման արդյունավե-տությունը բարձրացնելու, ֆիզ. որակները բարելավելու նպ. համար: Սպորտի տար-բեր ձևերում առավել հաճախ կիրառում են ուժ., տեխ. լծակավոր (լողում), թիա-վարման և այլ Տ-ներ:

ՏՐԵՆՏԻՆՅԱՆ (Trintignant) Ժան-Լուի (ծ. 1930), ֆրանսիացի դերասան: Նկարա-հանվել է «Եվ Աստված արարեց կնոջը», «Վազանց», «Տղամարդն ու կինը», «Կոն-ֆորմիստը», «Գնացք», «Մահափորձ» (խորհրդ. էկրանին՝ «Առևանգում Փա-րիզում»), «Տղամարդն ու կինը 20 տարի անց», «Ձենիսն ու Ջոնը», «Մեր» և այլ ֆիլմերում: Նկարահանել է «Հագեցած օր» (1973), «Լողի հրահանգիչը» (1979) ֆիլմերը: «Արծաթե արջ» (1968), «Կեսար» (2013) մրց-ներ:

ՏՐԵՈՆԻՆ, $CH_3CH(OH)CH(NH_2)COOH$, ալիֆատիկ ամինաթթու, մտնում է բոլոր սպիտակուցների բաղադրության մեջ՝ բացառությամբ պրոտամինի: Անփո-խարինելի ամինաթթու է, որի պահանջը հատկապես մեծ է աճող օրգանիզմում:

ՏՐԵՍԻ, **Թրեյսի** (Tracy), Սպենսեր (1900–1967), ամերիկացի կինոդերասան: Ստեղ-ծել է հիմնականում պարզ, ազնիվ մարդ-կանց կերպարներ («Ցասում», «Խիզախ նավապետը», «Նյուրնբերգյան դատա-վարություն», «Ծերունին և ծովը», «Խելա-կորույս, խելակորույս աշ-խարհ», «Գուշակիր՝ ով է գալու ճաշին») և այլ ֆիլմերում: «Օսկար» մրց. (1938, 1939):

ՏՐԵՎԵՐ Կամիլլա Վասիլևնա (1892–1974), ռուս. պատմաբան, արևելագետ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1943): Ուզբ. ԽՍՀ գիտ. վաստ. գործիչ: Աշխ-ները վերաբերում են Իրանի, Հունաբակտր. թագավորության, Հայաստանի [«Հին Հայաստանի մշակույթի պատմության ուրվագծեր (մ. թ. ա. II–մ. թ. IV դդ.)», ռուս., 1953, Աղվանքի («Կովկաս-յան Ալբանիայի պատմության և մշակույթի ուրվագծեր. մ. թ. ա. IV–մ. թ. VII դդ.», ռուս., 1959) պատմությանն ու մշակույթին:

ՏՐԵՎԻԹԻԿ (Trevithick) Ռիչարդ (1771–1833), ամերիկացի գյուտարար: Ստեղծել է անռելս շոգեսայլը (1801), ռելսուղային առաջին շոգեքարշը (1803):

ՏՐԵՎԻՐԱՆՈՒՍ (Treviranus) Գոտֆրիդ Ռեյնհոլդ (1776–1837), գերմանացի բնա-խույզ: Աշխ-ները վերաբերում են անող-նաշար կենդանիների անատոմիային և ֆիզիոլոգիային: Ժ. Բ. *Լամարկի* հետ միաժամանակ և նրանից անկախ ներդրել է (1802) «կենսաբանություն» եզրույթը: Հե-ղինակ է «Կենդանի բնության կենսաբա-նություն կամ փիլիսոփայություն» (հ. 1–6, 1802–21) աշխ-յան, որտեղ պաշտպանել է օրգ. աշխարհի էվոլյուցիայի տեսությունը:

ՏՐԵՏՅԱԿ Իվան Միխեևիչ (1923–2007), բանակի ուկրաինացի գեն. (1976): ԽՄ հերոս (1945): Սոց. աշխ. հերոս (1982): 1967-ից՝ Բելառուս. ՋՕ-ի զորքերի գլխ. հրամ.: 1986-ից՝ ԽՍՀՄ ՊՆ գլխ. տեսուչ և ԽՍՀՄ ՊՆ տեղակալ: 1987–91-ին՝ ԽՍՀՄ ՀՕՊ զորքերի գլխ. հրամ. և ՊՆ տեղակալ:

ՏՐԵՏՅԱԿ Վլադիմիր Ալեքսանդրովիչ (ծ. 1952), ռուս մարզիկ (տափօղակով հո-կեյ): ԽՍՀՄ ս. վ. վ. (1971): ԲԿՄԱ թիմի դարպասապահը: Ձմեռ. օլիմպ. խաղերի (1972, 1976, 1984), աշխարհի, Եվրոպայի, ԽՍՀՄ բազմակի (1970–1984) չեմպիոն: Ռուսաստանի հոկեյի ֆեդերացիայի նա-խագահ (2006-ից):

ՏՐԵՏՅԱԿՈՎ Յուրի Դմիտրևիչ (1931–2012), ռուս քիմիկոս: ՌԳԱ ակադ. (1987): Աշխ-նե-րը վերաբերում են անօրգ. նյութերի (նա-նոկոմպոզիտներ, պինդ էլեկտրոլիտներ, մագնիս. կիսահաղորդիչներ, բարձրջեր-մաստիճան. գերհաղորդիչներ) նուրբ քիմ. տեխնոլոգիային, պինդֆազ. ռեակցիաների ջերմադինամիկային և կինետիկային: Ամե-րիկ. քիմ. ընկ-յան (1992), Եվրոպ. ակադ-ի (1999) անդամ: ՌԴ Պետ. մրց. (2003), Ն. Ս. Կուրնակովի անվ. ոսկե մեդալ (2001):

ՏՐԵՏՅԱԿՈՎ Վիկտոր Վիկտորովիչ (ծ. 1946), ռուս. ջութակահար: ԽՍՀՄ ժող. արտիստ (1987): 1983–91-ին՝ Մոսկվայի կամեր. նվագախմբի (այժմ՝ Ռուսաստանի կամեր. նվագախումբ) գեղ. ղեկ.: Երկա-ցանկում՝ ռուս. և արևմտաեվրոպացի դասականների գործերից: Հանդես է եկել նաև անսամբլներում՝ Ս. Ռիխտերի, Յ. Բաշմետի, Օ. Կագանի, Ն. Գուտմանի և ուր. հետ: Երաժիշտ-կատարողների համամիութ. (1965), Պ. Ի. Չայկովսկու անվ. միջազգ. (1966, երկուսն էլ՝ Մոսկվա) մրցույթների 1-ին մրց-ներ:

ՏՐԵՏՅԱԿՈՎՅԱՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ Մոսկ-վայում, գիտագեղ. և մշակութալուսավոր. առաջին կենտրոններից Ռուսաստանում, ռուս. արվ-ի խոշորագույն թանգարանն աշխարհում: Հիմնադրել է Պ. Մ. Տրետ-յակովը (1832–1898)՝ որպես մասնավոր հավաքածու. 1892-ին եղբոր՝ Ս. Մ. Տրետ-յակովի հավաքածուի հետ նվիրել է Մոսկ-վա ք-ին: 1917-ից ներառվել են նաև այլ թանգարանների հավաքածուներ: Պատ-կերասրահում պահվում են XI–XVII դդ-ի հինռուս. սրբանկարչության, XVIII–XX դդ-ի գեղանկարչության, քանդակների և գրա-ֆիկ. գործերի ամենահարուստ հավաքա-

ծուները: Տեղավորված է Տրետյակովների նախկին տանը (գլխ. ճակատը կառուցվել է 1900–05-ին, նախագիծը՝ Վ. Մ. Վասնեցովի), 1982–96-ին համալիրը վերականգնվել է, կառուցվել Շարտարագիտ. մասնաշենքը (1989): 1986-ին Տ. պ-ին է հանձնվել Ղրիմի Վալի Պետ. պատկերասրահի շենքը (Տրետյակովյան պատկերասրահ Ղրիմի Վալում): 1991-ից՝ Համառուսաստանյան (1986–91-ին՝ Համամիութ.) «Պետական Տրետյակովյան պատկերասրահ» թանգարանների միավորում (Ա. Մ. Վասնեցովի բնակարան-թանգարանը, Վ. Մ. Վասնեցովի տուն-թանգարանը, Ա. Ս. Գոլուբկինայի արվեստանոց-թանգարանը, Պ. Դ. Կորինի տուն-թանգարանը, Սբ Նիկողայոսի թանգարան-եկեղեցին՝ Տոլմաչևներում):

ՏՐԻԱԹԼՈՆ (< հուն. tri – երեք և athlon – մրցում, պայքար), եռամարտ. ներառում է լողը (բաց լողավազանում), խճուղ. հեծանվավազքը, աթլետիկ. կրոսը: Տարբերում են Տ–ի 3 տեսակ՝ մեծ (3,8 *կմ*, 180 *կմ*, 42 *կմ*), միջին (2,5 *կմ*, 80 *կմ*, 20 *կմ*), կարճ (1,5 *կմ*, 40 *կմ*, 10 *կմ*): Ստեղծվել է ԱՄՆ-ում 1970-ական թթ-ին: Տ-ի միջազգ. ֆեդերացիայում (ITF, հիմն.՝ 1989) ընդգրկված է 106 երկիր (2017): Աշխարհի առաջնությունն անցկացվում է 1989-ից, Եվրոպայինը՝ 1985-ից: Ներառված է օլիմպ. խաղերի ծրագրում (2000-ից):

ՏՐԻԱՆՈՆԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 1920, կնքվել է հունիսի 4-ին Վերսալի (Ֆրանսիա) Մեծ Տրիանոն պալատում՝ ԱՀՊ-ում հաղթած երկրների և Հունգարիայի միջև: Ռումինիային են միացվել Տրանսիլվանիան և Բանատի արլ. մասը, Հարավսլավիային՝ Խորվաթիան, Բաչկան և Բանատի արմ. մասը, Չեխոսլովակիային՝ Սլովակիան և Անդրկարպատյան Ուկրաինան: Բուրգենլանդ մարզը հանձնվել է Ավստրիային: Պայմանագիրը սահմանափակել է Հունգարիայի ԶՈՒ-ի քանակը և հարկադրել վճարել ռազմատուգանքներ:

ՏՐԻԲՈՏԵԽՆԻԿԱ, (լատ.՝ tribos – շփում), **շփումատեխնիկա**, գիտ-յուն, որն ուսումնասիրում է մեքենաների և մեխանիզմների շփման ու մաշման ճարտարագիտ. խնդիրները, լուծում շփման կառավարման երևույթները՝ շփման զույգերի, հանգույցների կառուցվածքների և դրանց ճիշտ ընտրման ու շահագործման եղանակով:

ՏՐԻԲՈՒՆԱԼ, (լատ.՝ tribunal), 1. Ֆրանս. մեծ հեղ-յան ժամանակ քաղ. հանցագործությունների վերաբերյալ գործեր քննող բացառիկ դատարաններ: 2. Հատուկ դատարաններ (հեղ. Տ-ներ) խորհրդ. իշխանության առաջին տարիներին: 3. Որոշ երկրների ԶՈՒ-ում գործող դատարաններ, որոնք քննում են զինծառայողների, զինապարտների հանցագործությունների հետ կապված գործեր:

ՏՐԻԲՈՒՆՆԵՐ (լատ.՝ tribunusi), 1. **Ժողովրդական Տ.**, Հին Հռոմում ընտրովի բարձրագույն պաշտոնյա: Ընտրվել է (մ. թ. ա. 494-ից) պլեբեյներից: Ունեցել է պատրիկներից ընտրվող պաշտոնյաների և ծերակույտի գործողություններին միջամտելու իրավունք: Սկզբում ընտրվել են 2–5, մ. թ. ա. 457-ից՝ 10 ժող. Տ.՝ 1 տարով: Ժող. տրիբունի անձը համարվել է անձեռնմխելի: Կայսրության ժամանակաշրջանում ժող. տրիբունի պաշտոնը ձևականորեն պահպանվել է, սակայն կորցրել է նշանակությունը: 2. **Զինվորական Տ.** (լատ.՝ militum), զինվ. պաշտոն (լեգեոնի կամ լեգեոնի որևէ ջոկատի հրամ.) Հին Հռոմում: Մ. թ. ա. 444–367-ին մտցվել է հյուպատոս. իշխանությամբ օժտված զինվ. տրիբունի պաշտոնը:

ՏՐԻԲՈՒՅ Վլադիմիր Ֆիլիպովիչ (1900–1977), խորհրդ. բանակի ծովակալ (1943): Պատմ. գիտ. դ-ր: 1939–47-ին գլխավորել է Բալթյան նավատորմը: 1947–48-ին՝ Հեռավոր Արևելքի ԶՈՒ-ի գլխ. հրամ-ի տեղակալ, ՌԾՈՒ հրամ.:

ՏՐԻԳԵՐ (անգլ.՝ trigger), փոխարկիչ սարք, որը շատ երկար կարող է պահպանել կայուն հավասարակշռության իր 2 վիճակներից 1-ը և արտաքին ազդանշանի ազդեցությամբ թռիչքաձև փոխել մի վիճակը մյուսի: Առավել տարածված են էլեկտրոն. լամպերի, գազապարպում. և կիսահաղորդչ. սարքերի (նաև ինտեգրալ սխեմաների հիման վրա պատրաստված) Տ-ները: Օգտագործում են հիմնականում հաշվող. մեքենաներում և ավտոմատիկայի սարքավորումներում:

ՏՐԻԴԱԿՆԱՆԵՐ (Tridacna), երկփեղկանիների դասի փափկամարմինների սեռ: Հայտնի է 5 տեսակ՝ Հնդ. և Խաղաղ օվկ-ների արևադարձ. ծովերում՝ բուստ. խութերի մեջ: Հսկա Տ-ի խեցու երկ.՝ մինչև 1,4 *մ*, կ. զ.՝ մինչև 250 *կգ*: Ուտելի են: Խեցիներն օգտագործում են որպես շինանյութ, տնային կահ-կարասի պատրաստելու համար: Չվերահսկվող որսի պատճառով թվաքանակը կրճատվում է:

ՏՐԻԴԵՆՏԻ ԺՈՂՈՎ (Տրիենտի ժողով), կաթոլիկ. եկեղեցու տիեզ. ժողովը: Հրավիրվել է 1545–47, 1551–52, 1562–63-ին Տրենտո (լատ.՝ Tridentum, գերմ.՝ Trient) ք-ում, 1547–49-ին՝ Բոլոնիայում: Ամրագրել է կաթոլիկության դոգմաները, հաստատել Հռոմի պապերի գերակայությունը եկեղեցիների վրա, սաստկացրել հերետիկոսների նկատմամբ հալածանքները: Տ. ժ-ի որոշումները հիմք են դարձել հակառեֆորմացիայի ծրագրի համար:

ՏՐԻԵՍՏ (Trieste), ք-նվինգստ Իտալիայում, Ֆրիուլի-Վենետիկ-Ջուլիա մարզի և համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Ադրիատիկ ծովի ափին: Բն.՝ 194 հզ. (2010):

ՏՐԻԵՍՏԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սկզբնավորել են Աստվածատուր *Բաբիկյանի* գլխավորությամբ ՎնտՄՄ-ից առանձնացած Մխիթարյան միաբանները 1773-ին Տրիեստում (Իտալիա): 1776-ին հիմնադրել են տպարան և հրատարակել գրքեր: 1811-ին տեղափոխվել են Վիեննա և շարունակել իրենց գրահրատչ. գործունեությունը: Տես նաև ***Վիեննայի հայկական տպագրություն***:

ՏՐԻԼԻՈՆ (ֆրանս.՝ trillion), **հազար միլիարդ**, միավորով և 12 զրոյով պատկերվող թիվ, այսինքն՝ 10^{12}: Որոշ երկրներում Տ. են անվանում 10^{18} թիվը:

ՏՐԻԽԻԱԶ (հուն.՝ trichiasis, < trix – մազ), թարթիչների ոչ ճիշտ տեղադրությունը, երբ դրանք ուղղված են դեպի աչքը, գրգռում են շաղկապենին և եղջրենին՝ առաջացնելով բորբոքում: Պատճառները տրախոման և կոպաբորբն են:

ՏՐԻԽԻՆԱ (Trixina), **տրիխինել**, **թելաճիճու**, նեմատողների դասի որդ: Մակաբուծում է խոտակեր և ամենակեր կաթնասունների (խոզեր, առնետներ ևն) և մարդու աղիների պատերին ու մկաններում: Արուների երկ.՝ 0,6–1,6 *մմ*, էգերինը՝ մինչև 4,4 *մմ*: Առաջացնում են **տրիխինելոզ** հիվանդությունը: Տ-ի պատիճավորված թրթուրները տիրոջ մկաններում կենսունակությունը պահպանում են մինչև 1 տարի և ավելի:

ՏՐԻԽՈՄՈՆԱԴՆԵՐ, մտրակավորների դասի նախակենդանիների սեռ: Երկ.՝ 0,2–0,9 *մմ*: Մարդու և ողնաշարավոր կենդանիների, նաև միջատների մարսող. համակարգի և միզասեռ. ուղիների մակաբույծներ են: Հայտնի է մի քանի տասնյակ տեսակ:

ՏՐԻԽՈՄՈՆՈԶ, **տրիխոմոնիազ**, մարդու և առավելապես խոշոր եղջերավոր կենդանիների վարակիչ հիվանդություն: Հարուցիչները ***տրիխոմոնադներն*** են: Մարդը վարակվում է առավելապես սեռ. ճանապարհով: Դրսևորվում է միզասեռ. ուղիների լորձաթաղանթի բորբոքումով, կենդանիներինը՝ նաև վիժումներով:

ՏՐԻԽՈՍՏՐՈՆԳԻԼՈԶՆԵՐ, բուսակերների և թռչունների ինվազիոն հիվանդություն: Հարուցիչը շրդանում ու բարակ աղիներում մակաբուծվող կլոր որդերն են: Կենդանիները վարակվում են արոտավայրում կերի կամ ջրի հետ ինվազիոն թրթուրները կուլ տալուց:

ՏՐԻԽՈՅԵՖԱԼՆԵՐ, **մազագլուխներ**, նեմատողների դասի որդերի սեռ: Հայտնի է մոտ 60 տեսակ: Արուների երկ.՝ 30–40 *մմ*, էգերինը՝ 35–50 *մմ*: Մակաբուծում են կենդանիների (կաթնասուններ) և մարդու (մազագլուխ) հաստ աղիներում՝ առաջացնելով տրիխոցեֆալոզներ:

ՏՐԻԽՈՅԵՖԱԼՈԶ, որոճողների, խոզերի և մսակերների ինվազիոն հիվանդություն: Հարուցիչները Trichocephalus (մազագլուխներ) ցեղի կլոր որդերն են: Մակաբուծում են հաստ աղիներում: Հաճախ հիվանդանում են 3–4 ամսական խոճկորներն ու գառները: Որոճողները հիմնականում վարակվում են արոտավայրում, խոզերը՝ ամռանը՝ արոտատեղերում:

ՏՐԻԽՈՖԻՏԻԱ, **խուզող որքին**, մարդու (մաշկի, եղունգների ու մազերի) և կենդանիների մաշկասնկախտ (դերմատոմիկոզ): Մարդը վարակվում է հիվանդ կենդանիներից (հիմնականում՝ կատուներից ու շներից) կամ մարդուց: Գլխի մազածածկ հատվածի կամ հարթ մաշկի վրա առաջանում են վարդակարմիր թեփոտվող բծեր, որոնց վրա մազերը կոտրվում են, ախտահարված եղունգները փայլատ են, հաստացած և փշրվող:

ՏՐԻՆԻԴԱԴ ԵՎ ՏՈԲԱԳՈ (Trinidad and Tobago), **Տրինիդադ և Տոբագոյի Հանրապետություն** (Republic of Trinidad and Tobago), կղզային պետություն Վեստ Ինդիայում՝ Տրինիդադ և Տոբագո կղզիների վրա: Տարածքը՝ 5,1 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,34 մլն (2013): Մայրաքաղաքը՝ Պորտ օֆ Սպեյն: Պետ. լեզուն՝ անգլ.: Կառավարման ձևը՝ խորհրդարանահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը (Ներկայացուցիչների պալատ և Սենատ): Հավատացյալների մեծ մասը քրիստոնյա և հնդուական է: Բաժանված է 9 կոմսության, 5 մունիցիպալիտետի և 1 ինքնավար տարածքի (Տոբագո կղզի): Անդամակցում է ՄԱԿ-ին, Ազգերի համագործակցությանը: Արագ զարգացող երկիր է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 23,1 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է նավթ, բանան, կակաո, ցիտրուս. և այլ մրգեր, ռոմ, սիգար ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ Տ. և Տ-ի դոլար:

Հնում S. և S–ում բնակվել են հնդկացիներ: Ք. Կոլումբոսը կղզիները հայտնաբերել է 1498–ին: Իսպ. գաղութացումը հանգեցրել է բնիկների ոչնչացմանը: Գաղութարարներն այստեղ ստրուկներ են բերել Աֆրիկայից: 1797–ին Մեծ Բրիտանիան զավթել է Տրինիդադը: Տորագոն, որ մինչև XIX դ–ի սկիզբը կովախնձոր էր Անգլիայի, Իսպանիայի, Հոլանդիայի և Ֆրանսիայի միջև, 1814–ին դարձել է Մեծ Բրիտանիայի գաղութ: 1899–ին վարչականորեն ենթարկվել է Տրինիդադին: 1950–ին ստացել է ներքին ինքնավարության իրավունք: Անկախացել է 1962–ին: 1976–ին S. և S. հռչակվել է հանրապետություն:

ՏՐԻՈ (իտալ.՝ trio, < լատ trie – երեք), **եռյակ**, 1. երեք կատարողներից (գործիք. կամ վոկալ) բաղկացած անսամբլ: Տարածված են լար. (ջութակ, ալտ, թավջութակ) և դաշնամուր. (ջութակ, թավջութակ, դաշնամուր) տեսակները: 2. Երաժշտ. ստեղծագործություն այդ անսամբլի համար:

ՏՐԻՈԴ (< հուն. tri – երեք և *էլեկտրոդ*), էլեկտրոն. լամպ, որն ունի 3 էլեկտրոդ՝ ջերմաէլեկտրոն. կաթոդ (ուղղակի կամ անուղղակի շիկացման), կառավարող ցանց և անոդ: Օգտագործում են որպես ընդունիչ–ուժեղացուցիչ կամ գեներատոր. լամպ: 1906–ին ստեղծել է Լ. դը *Ֆորեսթը*:

ՏՐԻՈՋՆԵՐ, պարզագույն ածխաջրեր (ածխածնային շղթան պարունակում է ածխածնի 3 ատոմ)՝ գլիցերին. ալդեհիդ և երկհիդրօքսիացետոն: Առաջանում են բույսերում՝ լուսասինթեզով: Նյութափոխանակության կարևոր միջանկյալ արգասիքներ են:

ՏՐԻՈԼԵ (Triolet) Էլզա (Կագան Էլլա Յուրևնա, 1896–1970), հրեա ֆրանսիագիր գրող: Լ. *Արագոնի* կինը: Սկզբն. շրջանում գրել է ռուս.: Հեղինակ է «200 ֆրանկ տուգանք մահուդը փչացնելու համար» (1945) պատմվածքների ժող–ի, «Նեյլոնի դար» (1959–63) սոցիալ–հոգեբ. թեմաներով վիպաշարի: Հայ. հրատարակվել է «Վինյոնի սիրահարները: Ավերակների տեսուչը» (1965) գիրքը:

ՏՐԻՈԼԵՏ (ֆրանս.՝ triolet, < իտալ. trio – երեք), բանաստեղծության կառուցման կայուն ձև, որը բաղկացած է 8 տողից: S–ի 1–ին տողը կրկնվում է որպես 4–րդ և 7–րդ տողեր, իսկ 2–րդ տողը՝ 8–րդ տող: Ունի ընդամենը 2 հանգ. կրկնվում են 4–ական անգամ: Հայ գրկ–յան մեջ S–ներ են գրել Վ. Տերյանը, Ե. Չարենցը, Ն. Զարյանը և ուր.:

ՏՐԻՊԱՆՈՍՈՄ՝ՆԵՐ (Trypanosoma), մտրակավորների դասի նախակենդանիների սեռ: Չափերը՝ 12–100 *մկմ* և ավելի: Հայտնի է մի քանի տասնյակ տեսակ: Մարդու և ողնաշարավոր կենդանիների արյան ու հյուսվածքների մակաբույծներ են: Փոխանցողներն արյունածուծ միջատներն են (ցեցե ճանճ, շնաճանճեր ևն):

ՏՐԻՊԱՆՈՄՈՆԱԶ, մարդու և կենդանիների քրոնիկ. ինվազիոն հիվանդությունների խումբ (տենդ, ավշագեղձերի ախտահարում ևն). հարուցիչները *տրիպանոսոմներն* են: Մարդկանց մոտ տարբերում են քնախտը (աֆրիկ. S.) և Շագասի հիվանդությունը (ամերիկ. S.):

ՏՐԻՊԵՐ, տես *Գոնոռեա*:

ՏՐԻՊԼԵՔՍ (լատ.՝ triplex – եռակի), անբեկոր ապակի. բաղկացած է 3 շերտից՝ սիլիկատ. կամ օրգ. ապակու 2 և դրանք իրար սոսնձող պոլիմերի (սովորաբար՝ պոլիվինիլբուտիրալի) շերտերից: Օգտագործում են փոխադրամիջոցների, սկաֆանդրների ապակեպատման համար:


ՏՐԻՊՈԼԻ, 1. **Տարաբուլուս էլ Գարբ**, Լիբիայի մայրաքաղաքը, նվիճգստ Միջերկր. ծովի ափին: Բն.՝ 1 մլն (2010): Երկրի գլխ. առևտրաարդ. և ֆին. կենտրոնն է. կան աննդի, թեթև, շինանյութերի արդ–յան և այլ ձեռն–ներ: Հիմնադրել են փյունիկեցիները մ. թ. ա. I հզ–ամյակի 1–ին կեսին՝ Էա անունով: Պահպանվել են հռոմ. և բյուզ. ժամանակների ճարտ. հուշարձաններ, մզկիթներ (X, XVIII, XIX դդ.): 2. **Տարաբուլուս էշ Շամ**, ք–նվինգստ Լիբանանում, Հս. Լիբանան մուհաֆազի վարչ. կենտրոնը: Բն.՝ 192,3 հզ. (2010): Նավթի արդ. և գղտ. շրջանի կենտրոն է: Հիմնել են փյունիկեցիները մ. թ. ա. մոտ II հզ–ամյակում:

ՏՐԻՊՈԼԻՏԱՆԻԱ, պատմ. մարզ Լիբիայում: Մ. թ. ա. I հզ–ամյակի 1–ին կեսին առափնյա գոտում հիմնադրվել է փյունիկեցիների 3 գաղութ (3 քաղաք), որոնք մ. թ. ա. V դ.–XX դ–ի սկզբին եղել են Կարթագենի, 218–201–ին՝ Նումիդիայի, ապա՝ Հռոմի, վանդալների, Բյուզանդիայի, Արաբ. խալիֆության, Իսպանիայի, Օսմ. կայսրության (XVI դ.–1911) տիրապետության տակ: 1911–12–ի իտալա–թուրք. պատերազմից հետո S–ի տարածքի մի մասը, իսկ 1920–ական թթ–ի վերջին ողջ տարածքը զավթել են իտալ., 1943–ին՝ անգլ. զորքերը: 1951–63–ին անկախ Լիբիայի նահանգ–ներից էր. 1963–ին, որպես վոմ վերացվել է:

ՏՐԻՊՈԼՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ, Էնոլիթյան դարաշրջանի հնագիտ. մշակույթ Ուկրաինայի, Մոլդովայի և Ռումինիայի տարածքում: Կոչվել է առաջին գտածոյի տեղի՝ Կիևի մարզի Տրիպոլյե գ–ի անունով: Հայտնաբերվել են մեծ քանակությամբ զարդարուն խեցանոթներ, գղտ. փայտամշակության, հյուսման և այլ գործիքներ, նաև ցորենի ու գարու հատիկներ, կենդանիների ոսկորներ են:

ՏՐԻՊՍԻՆ, մարսող. ֆերմենտ, մշակվում է մարդու և կենդանիների ենթաստամոքս. գեղձում՝ ոչ ակտիվ տրիպսինոգենի տեսքով: Աղիներում ճեղքում է սպիտակուցները:

ՏՐԻՊՏՈՖԱՆ, անփոխարինելի տարացիկլ. ամինաթթու: Ոչ մեծ քանակներով պարունակվում է բազմաթիվ սպիտակուցների բաղադրության մեջ: Կաթնասունների բջիջները S. օգտագործում են նիկոտինաթթվի (PP վիտամին) և սերոտոնինի, միջատները՝ աչքի գունանյութերի, բույսերը՝ հետերոաուքսինի, ինդիգոյի, մի շարք ալկալոիդների կենսասինթեզի համար: Աղիներում նեխման շարժընթացների ընթացքում S–ից առաջանում են սկատոլ և ինդոլ: Մարդու օրգանիզմում S–ի փոխանակության խանգարումները հանգեցնում են ծանր հիվանդությունների: Որոշ սպիտակուցների սննդ. արժեքը բարձրացնում են՝ ավելացնելով քիմ. սինթեզով ստացված S.:



ՏՐԻՊՈՒՐԱ, նահանգ Հնդկաստանի հս–արլ–ում: Տարածքը՝ 10,5 հզ. *կմ*^{2}, բն.՝ 3,67 մլն (2011): Վարչ. կենտրոնը՝ *Ագարթալա*:

ՏՐԻՍՍԻՆՈ (Trissino) Ջանջորջո (1478–1550), իտալացի գրող, լեզվաբան: Հեղինակ է «Սոֆոնիսբա» (1515, հրտ.՝ 1524) ողբերգության, «Սիմիլիմներ» (հրտ.՝ 1548), «Գոթերից ազատագրված Իտալիան» (գիրք 1–27, հրտ.՝ 1547–48) հերոս. էպոպեայի, նաև լեզվաբ. աշխ–ների:

«ՏՐԻՍՏԱՆ ԵՎ ԻԶՈԼԴԱ», միջնադար. ասպետ. սիրավեպ: Հիմն. թեման ասպետ Տրիստանի և Կոռնուելի արքայի կնոջ՝ Իզոլդայի ողբերգ. սիրո պատմությունն է: Հայտնի են վեպի արևմտաեվրոպ. լեզուներով գրված բազմաթիվ տարբերակներ, Ռ. Վագների համանուն օպերան (բեմ.՝ 1865): Հայ. հրատարակվել է «Տրիստանի և Իզոլդայի սիրավեպը» (1958):

ՏՐԻՏԱՆՕՊԻԱ, (< հուն. tritos – երրորդ, *ա...* և ops – աչք), բնածին մասնակի գունակուրություն, երբ բացակայում է կապույտի (մանուշակագույն) ընկալումը: Տես նաև *Դալթոնիզմ*, *Դեյտերանոպիա*, *Պրոտանոպիա*:

ՏՐԻՏԻԿԱԼԵ (<լատ. Triticum – ցորեն և Cecala – աշորա, Triticale), **աշորացորեն**. աշորայի և ցորենի հիբրիդը, ունի ցորենի ձև, ստացվել է աշորայի և ցորենի խաչասերումով: Լինում են աշնանացան և գարնանացան: Կերաբույս է՝ ընտրասերման արժեքավոր հնարավորություններով:

ՏՐԻՏԻՈՒՄ (Tritium), T (կամ ^{3}H), ջրածնի ճառագայթաակտիվ իզոտոպ. զանգվածի թիվը՝ 3 (այստեղից՝ անվանումը՝ < հուն. tritos – երրորդ): Ատոմի միջուկը կազմված է պրոտոնից և 2 նեյտրոնից. կիսատրոհման պարբերությունը՝ 12,33 տարի:

ՏՐԻՏՈՆ, ծով. աստվածություն հուն. դիցյան մեջ: *Պոսեյդոնի* և ծովերի տիրուհի Ամֆիտրիտեի որդին: Պատկերվել է ոտքերի փոխարեն ձկան պոչով ծերունու կամ պատանու տեսքով:

ՏՐԻՏՈՆՆԵՐ (Triturus), *սալամանդրների* ընտանիքի պոչավոր երկկենցաղների սեռ: Երկ.՝ մինչև 18, պոչինը՝ մինչև 9 *սմ*: Հայտնի է 12 տեսակ: Բազմացման շրջանում ապրում են ջրում: S. են կոչվում նաև պոչավոր երկկենցաղների այլ սեռերի մի քանի ներկայացուցիչներ:

ՀՀ–ում տարածված է Triturus սեռի 2 տեսակ՝ սովոր. և փոքրասիական S.:

ՏՐԻՖՈՆՈՎ, Յուրի Վալերիանովիչ (1925–1981), ռուս գրող: Հեղինակ է «Ուսանողներ» (1950), «Ծարավի հագեցում» (1963) վեպերի, «Անհամբերություն» (1973) պատմավեպի, «Փոխանակություն» (1969), «Ուրիշ կյանք» (1975), «Առափնյակի տունը» (1976), «Ծերունին» (1978) հոգեբ. վիպակների, «Խարույկի ցոլքը» (1965) վավերագր–հուշագրության, «Ինչպես կարձագանքվի մեր խոսքը...» (հրտ.՝ 1985) հրապարակախոս., «Ժամանակը և տեղը» (1980, անավարտ) ինքնակենսագր. երկերի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ՏՐՅՈՒՖՈ (Truffaut) Ֆրանսուա (1932–1984), ֆրանսիացի կինոռեժ.: «Նոր ալիք» ուղղության հիմնադիրներից: S. համաշխ. ճանաչման արժանացած «400 հարված» (1959) ֆիլմի հերոսին անդրադարձել է հետագա ֆիլմերում («Գողացված համբույրներ», 1968, «Անհետացած սեր», 1979, ևն): «Ադել Հ–ի պատմությունը» (1975), «Կրակ՛ք դաշնակահարի վրա» (1960), «Ժյուլը և Ջիմը» (1962), «Ամերիկյան գիշեր» (1973) և այլ կինոնկարներում արծարծել է միայնակ, խոցելի մարդկանց թեման: Կաննի կինոփառատոնի (1959), «Օսկար» (1974) մրց–ներ:

ՏՐՆԳԻ, **զուռնի տրնգի**, տղամարդկանց կովկաս. քաղաք. մենապար՝ տարածված XIX դ–ի 1–ին կեսին: Չափը՝ 3/4, տեմպը գնալով արագանում է, քայլերն ու շարժումները կտրուկ են: Պարում են հարսանիքներին, տոնախմբություններին՝ զուռնայով և դհոլով: Վերջին շրջանում

անսամբլների ծրագր. պարերի բաղկացուցիչ մասերից է:

ՏՐՆԿԱ. (Trnka) Յիրժի (1912–1969), չեխ կինոռեժ–մուլտիպլիկատոր: ՉԽՍՀ ժող. արտիստ (1963): Տիկնիկ. կինոյի հիմնադիրներից: Նկարահանել է «Շպալիչեկ» (1947), «Քաջարի զինվոր Շվեյկի արկածները» (1955), «Ամառային գիշերվա երազը» (1959), «Ձեռքը» (1965) և այլ մուլտֆիլմեր: ՉԽՍՀ Պետ. մրց. (1954):

ՏՐՈԳ (գերմ.՝ Trog – բառացի՝ «տաշտ»), սառցադաշտի ազդեցության հետևանքով առաջացած խոր և զառիկող լանջերով լեռն. հովիտ: Լայնակի կտրվածքը սովորաբար U–աձև կամ տաշտաձև է՝ ընդարձակ, թեք, գոգավոր հատակով ու զառիթափ կողերով, որոնք որոշ բարձր–յուններում ունենում են հարթ ու թեքված մակերես:

ՏՐՈԳԼՈԲԻՈՆՏՆԵՐ (< հուն. trogle – որջ, քարայր և bios – կյանք), **քարայրաբնակներ**, կենդանիներ, որոնք մշտապես ապրում են քարայրերում, հանքապարների ճեղքերում և այլ բնակատեղիներում (շատ անողնաշարներ, քարանձավ. ձկներ, երկկենցաղներից՝ պրոտեյները): Տ–ին բնորոշ են գունակազրկումը, կուրությունը, մարմնի հավելումների երկարացումը:

ՏՐՈԳՈՍ Պոմպեոս (Pompeius Trogus), մ. թ. ա. I–մ. թ. I դդ–ի հռոմեացի պատմագիր: Նրա «Փիլիպպոսի պատմությունը» (44 գիրք, չի պահպանվել) մեզ է հասել շնորհիվ Տ–ի երկերի նախաբանների («Պրոլոգներ») և հռոմեացի պատմագիր Յուստինոսի (II–III դդ.)՝ Տ–ի աշխ–յան համառոտ տարբերակի:

ՏՐՈՒՅԵ ՄԵՐԳԻՅԱՆ ՄԱՅՐԱՎԱՆՔ, մենաստան, 1744–ից՝ մայրավանք: Մոսկվայից 71 *կմ* հս՝ այժմյան Զագորսկում: Հիմնադրել է Սերգի Ռադոնեժսկին (XIV դ–ի կեսին): Շարտ. համալիրն ընդգրկում է ամրոցի պատերն ու աշտարակը (XVI–XVII դդ.), Սբ Երրորդության (1422–23), Վերափոխման (1559–85) տաճարները, Դուխովսկայա եկեղեցի–զանգակատունը (1476), հիվանդասենյակները՝ Զոսիմայի և Սավվատիի եկեղեցով (1635–38), սեղանատունը (1686–92), վերդարպասյա Հովհաննես Նախավկայի (1693–99) եկեղեցին, զանգակատունը (1741–70) և այլ կառույցներ: 1920–ին Տ–Ս. մ–ում ստեղծվել է պատմագեղ. թանգարան (1940–ից՝ թանգարան–արգելոց): Մենաստանը վերաբացվել է 1946–ին: Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՏՐՈՀՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ, կետադր. նշաններ. գործածվում եմ տեքստը նախադասությունների և վերջիններս էլ շարահյուս. բաղադրիչ մասերի բաժանելու համար: Դրանք են՝ վերջակետ (:), միջակետ (.), ստորակետ (,), բութ (՝) ևն:

ՏՐՈՀՈՒՄ (ճեղքում) **ատոմի միջուկների**, ատոմի միջուկի բաժանումը 2 (հազվադեպ՝ 3 կամ 4) բեկորի: Նեյտրոնների ազդեցությամբ ատոմի միջուկի առաջին Տ. հայտնաբերել են գերմանացի ֆիզիկոսներ Օ. *Հանը* և Ֆ. *Շտրասմանը* (1938): Ուղեկցվում է 2–րդային նեյտրոնների γ–քվանտների առաքումով և էներգիայի անջատումով: Այս երևույթի հիման վրա իրականացվել են միջուկ. շղթ. ռեակցիաները, ստեղծվել միջուկ. ռեակտորներ և միջուկ. պայթյուն (ատոմ. ռումբ): Միջուկի ինքնաբերաբար (ինքնական) Տ. (հայտնաբերել են Գ. Ն. *Ֆլյորովը* և Կ. *Պետրժակը*, 1940) տեղի է ունենում միայն ծանր մետաղների (օր.՝ ուրանի) ատոմներում, սահմանափակում է առավել ծանր անդրուրան. տարրերի գոյության հնարավորությունը:

ՏՐՈՄԲՈՆ (իտալ.՝ trombone, < tromba – փող), պղնձե փող. երաժշտ. գործիք: Բաղկացած է երկար, գլանաձև, 2 անգամ կորացված փողից, որն ավարտվում է լայն փողալայնույկով, փողի մյուս ծայրին թասաձև մունդշտուկն է: Տարբերում են միջին մասը շարժ. (**ցուգտրոմբոն**) և կափույրիկներով (XIX դ–ի 1–ին կեսից) Տ.: Հայտնի է Տ–ի 6 տեսակ՝ սոպրանոյից մինչև կոնտրաբաս: Հիմնականում նվագախմբային գործիք է:

ՏՐՈՄՊ (ֆրանս.՝ trompe), քարե շարվածքով բրդաձև, կոնաձև կամ գնդաձև թաղի մաս կազմող կառուցվածք. տարր. գլխավորապես կիրառվում է գմբեթատակ քառակուսուց գմբեթի թմբուկի բոլորակ հիմքին անցնելու համար: Հայկ. ճարտ–յան մեջ հայտնի է V դ–ից (Զովունիի Պողոս–Պետրոս, Ողջաբերդի եկեղեցիներ), առավել տարածվել է VI–VII դդ–ից (Օձունի, Պտղնիի, Մաստարայի և այլ եկեղեցիներ), հարատևել է մինչև X դ. (Կարսի Առաքելոց, Սանահինի Սբ Աստվածածին և այլ եկեղեցիներ): Զարգացած միջնադարում Տ. փոխարինվել է առագաստով:

ՏՐՈՅ, **Իլիոն**, հնագույն ք. Փոքր Ասիայի հս–արմ–ում: Տրովադայի քաղ. խոշոր կենտրոնը: Տրոյական պատերազմի մասին հուն. էպոսից հայտնի Տ. հայտնաբերվել է 1865–ին՝ Հիսարլըկ բլրի (Հվ–արմ. Թուրքիա) հնագիտ. պեղումների ժամանակ: 1870–80–ական թթ–ին Տ–ում պեղումներ է կատարել Հ. Շլիմանը, այնուհետև՝ գերմանացի հնագետ Վ. Դյորպֆելդը (1893–94) և ամերիկացի հնագետ Կ. Բլեգենը (1932–38): Նրանք բացել են վաղ, միջին, ուշ բրոնզի և երկաթի դարերի հնագիտ. շերտեր:

ՏՐՈՅԱԿԱՆ ՁԻ, ըստ հուն. առասպելաբանության՝ *Տրոյական պատերազմի* 10–րդ տարում *Աղիլևսի* խորհրդով կառուցված փայտե հսկա ձի: *Տրոյան* պաշարած հույները իբր դրա մեջ թաքցրել են մի քանի ընտիր ռազմաջոկատ, այն թողել քաղաքի արտաքին պարսպի մոտ և հեռացել՝ ձևացնելով, թե վերացնում են պաշարումը: Տրոյացիները, անտեսելով Լաոկոոն քրմապետի նախազգուշացումները և հավատալով հույն լրտեսի կեղծ խոսքերին, թե փայտե ձիուն տիրող քաղաքը դառնալու է անառիկ, այն տեղափոխել են պարիսպներից ներս և զետեղել Աթենաս դիցուհու տաճարի մոտ: Գիշերը դրա միջից դուրս եկած զինվորները բացել են բերդապարսպի դարպասները և ներս թողել հուն. զորքերին, որոնք գրավել ու կործանել են Տրոյան:

ՏՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ, հուն. ավանդության համաձայն՝ Միկենեի թագավոր *Ագամեմնոնի* գլխավորած աքայական թագավորների դաշնակցության պատերազմը *Տրոյայի* դեմ: Ավարտվել է աքայացիների՝ Տրոյայի գրավմամբ: Ավանդությունը հաստատվել է Տրոյայի պեղումներով, ըստ որի՝ մ. թ. ա. մոտ XIII դ–ի կեսին քաղաքը ենթարկվել է երկարատև պաշարման և ավերվել (մ. թ. ա. մոտ 1260–ին):

ՏՐՈՅԱՅԻՆԵՐ, փոքր մոլորակների (աստերոիդների) 2 խմբեր, որոնք պտտվում են Արեգակի շուրջը գրեթե *Յուպիտերի* ուղեծրով:

...ՏՐՈՆ (*էլեկ/տրոն/*), օգտագործվում է էլեկտրավակուումային սարքերի, մասնիկների արագացուցիչների և այլ սարքավորումների անվանումներով (օր.՝ բետատրոն, մագնետրոն):

...ՏՐՈՊԻԱ. (հուն.՝ tropos – պտույտ, ուղղություն), բարդ բառերի մաս. նշանակում է «պտույտ, ուղղություն» (օր.՝ ***անիզոտրոպություն***):

ՏՐՈՊԻԶՄՆԵՐ (հուն.՝ tropos – պտույտ, ուղղություն), բույսերի օրգանների (ցողուն, արմատներ, տերևներ) շարժումներն աճման ընթացքում՝ պայմանավորված որևէ գրգռիչի՝ լույսի (ֆոտոտրոպիզմ), ջերմության (թերմոտրոպիզմ), երկրի ձգող. ուժի (***գեոտրոպիզմ***), հպման (հապտոտրոպիզմ), ջրի (հիդրոտրոպիզմ), թթվածնի (աերոտրոպիզմ), քիմ. նյութերի (քեմոտրոպիզմ) ուղղորդված ազդեցությամբ: Տ–ի հիմքում անհավասարաչափ աճն է, որն առաջ է գալիս բույսերում բուսահորմոնների վերաբաշխման արդյունքում:

ՏՐՈՊԻՆԻՆ Վասիլի Անդրեևիչ (1776–1857), ռուս գեղանկարիչ: Մինչև 1823–ը եղել է ճորտ: Հեղինակ է դիմանկարների (որդու դիմանկարը, 1818, «Ա. Ս. Պուշկին», 1827, «Ինքնադիմանկար», 1846), հասարակ մարդու փոքր–ինչ իդեալականացված կերպարների («Ժանեկագործուհին», 1823):

ՏՐՈՊՈՊԱՈՒԶԱ. (< հուն. tropos – շրջադարձ և pausis – դադար), ներքնոլորտի (տրոպոսֆերայի) և վերնոլորտի (ստրատոսֆերայի) միջև ընկած անցում. շերտը:

ՏՐՈՊՈՍՖԵՐԱ. (< հուն. tropos – շրջադարձ և sphaira – ոլորտ), **ներքնոլորտ,** մթն–ի ստորին, ավելի խիտ շերտը, որտեղ ջերմաստիճանն ըստ բարձր–յան նվազում է (1 հզ. *մ*–ին՝ միջինը 6°C): Բևեռ. շրջաններում բարձր. 8–10 *կմ* է, արևադարձ. շրջաններում՝ 16–18 *կմ*: Պարունակում է մթն–ի ընդհ. զանգվածի շուրջ 80 %–ը: Տ–ում կենտրոնացած են ջրի գոլորշինե–րի գրեթե ամբողջ քանակը և ամերոզոլների (ծուխ, փոշի ևն) հիմն. զանգվածը: Զարգացած է կոնվեկցիան, այստեղ են առաջանում ամպերը, ցիկլոններն ու անտիցիկլոնները, եղանակն ու կլիման պայմանավորող մյուս շարժընթացները:

ՏՐՈՊՈՎՍԿԻ Լև Նաումովիչ (1885–1944), ռուս. մատենագետ, գրադարանագետ: 1930–ից՝ ՌԽՖՍՀ պետ. հրտչ–յունների միավորում մատենագիտ. ինստ–ի տնօրեն: Վերամշակել է Համբնդհ. տասնորդ. դասակարգման հիման վրա ստեղծված տպագիր հրտ–յունների աղյուսակները (այսպես կոչված՝ Տ–ի աղյուսակներ, 1938–46–ին՝ 5 հրտ–յուն) հանր. գրադարանների համար: Տ–ուն աշակերտել է Զաքար *Համբարձումյանը*:

ՏՐՈՎԱԴԱ., հնագույն մարզ Փոքր Ասիայի հս–արմ–ում (ժամանակակից Թուրքիայի տարածքում): Մ. թ. ա. III հզ–ամյակում այստեղ ստեղծվել է Տրոյա թագավորությունը (մ. թ. ա. մոտ 1260–ին վերացել է *Տրոյական պատերազմի* հետևանքով): Մ. թ. ա. VII դ–ում Տ. երկիրը նվաճել են լիդիացիները, մ. թ. ա. VI դ–ի կեսին՝ պարսիկները, մ. թ. ա. 334–ին՝ Ալեքսանդր Մակեդոնացին: Մ. թ. ա. 133–ից մինչև մ. թ. սկիզբը մտել է հռոմ. Ասիա պրովինցիայի մեջ:

ՏՐՈՏԱ. (Trotta) Մարգարետե ֆոն (ծ. 1942), գերմանացի դերասանուհի, կինոռեժ.: Նկարահանել է «Կատարինա Բլյումի անարգված պատիվը» (1975, Ֆ. Շլյոնդորֆի հետ, ըստ Հ. Բյոլի), «Քրիստի Կլագեսի երկրորդ զարթոնքը» (1977), «Ռոզա Լյուքսեմբուրգ» (1986), «Խոստում» (1995), «Ես ուրիշ եմ» (2006) և այլ ֆիլմեր:

ՏՐՈՏԻԼ, *եռնիտրոտոլուոլ, տոլ,* արոմատիկ նիտրամիացություն, բաց դեղնավուն բյուրեղներ են: Անհատ. պայթուցիկ նյութ է ցածրազգայուն հարվածի և շփման նկատմամբ, պայթյունի ջերմությունը՝ 4,2 *ՄՋ/կգ*: Կիրառվում է ռազմամթերքի լիցքավորման համար և պայթեցման աշխ-ների համար՝ մաքուր վիճակում կամ խառնուրդներով, օր.՝ ամոնիակ. բորակի հետ: Պայթյունի արգասիքները թունավոր են:

ՏՐՈՏԻԼԱՅԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ, միջուկ. կամ ջերմամիջուկ. լիցքի պայթյունի համարժեքը: 1 *կգ* ^{235}U-ի կամ ^{239}Pu-ի միջուկ. պայթյունը (բոլոր միջուկների լրիվ տրոհման դեպքում) անջատված էներգիայի քանակով համարժեք է 20000 *տ տրոտիլի* քիմ. պայթյունին: S. h-ի մեծությունն օգտագործում են տարբեր պայթուցիկ նյութերի պայթյուն. հատկությունների համեմատ. գնահատման համար. թվապես հավասար է տրոտիլի այն զանգվածին, որի պայթյուն. փոխարկման հզորությունը համարժեք է տվյալ պայթուցիկ նյութի պայթյունի հզորությանը (առավել հզոր պայթուցիկ նյութերի S. h-ի մեծությունը հասնում է 2-ի):

ՏՐՈՅԿԻ (Բրոնշտեյն) Լև (Լեյբա) Դավիդովիչ (1879–1940), հրեա պետ., քաղ. գործիչ: 1896-ից եղել է ռուս. ս-դ. շարժման մեջ: 1904-ից հանդես է եկել որպես բոլշևիկների և մենշևիկների միավորման ջատագով: 1905–07-ի հեղ-յան կազմակերպիչներից և Պետրոգրադի բանվորների պատգմ-ների խորհրդի փաստացի նախագահ, 1917-ին՝ նախագահ, Հոկտ. զինված ապստամբության ղեկ-ներից: 1917–18-ին՝ ԱԳ, 1918–25-ին՝ ռազմ. գործերի ժողկոմ, ՌԽՖՍՀ ռազմ. հեղկոմի նախագահ: Կարմիր բանակի ստեղծողներից: 1927-ին հեռացվել է կուս-յունից, ուղարկվել Ալմա Աթա, 1929-ին անցել է արտերկիր, 1932-ին զրկվել ԽՍՀՄ քաղաքացիությունից: Սուր քննադատության է ենթարկել Ի. Վ. Ստալինին: Մեքսիկայում Տ-ուն սպանել է ՆԳ ժողկոմատի իսպանացի գործակալ Ռ. Մերկադերը:

ՏՐՈՖԻՄՈՎ Նիկոլայ Նիկոլաևիչ (1920–2005), ռուս դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1990): 1946–63-ին՝ Լենինգրադի կոմեդիայի, 1964-ից՝ Մեծ դրամատիկ. թատրոնների դերասան (Պիկվիկ՝ «Պիկվիկյան ակումբ»՝ ըստ Չ. Դիքենսի, Ռասպլյուև՝ Ա. Ն. Կոլկերի և Վ. Մ. Վերբինի «Տարեկինի մահը»՝ ըստ Ա. Վ. Սուխովո-Կոբիլինի, ևն): Նկարահանվել է կինոյում («Լև Գուրիչ Սինիչկին», «Իմ ընտրյալը» ևն):

ՏՐՊԻՄԻՐՈՎԻՉՆԵՐ (Trpimirovići), խորվաթ. պետության (925-ից՝ թագավոր. հարստություն) իշխաններ: Իշխել են 845-ից մինչև XI դ. (ընդհատումներով): Հիմնադրել է իշխան Տրիպիմիրը (մոտ 845–864): Հայտնի ներկայացուցիչներն են Մուտիմիրը (մոտ 890–910), Տոմիսլավը (մոտ 910–928), Ստեփան II-ը (մոտ 1090–91) և ուր.:

ՏՐՈՒԲԱԴՈՒՐ (ֆրանս.՝ troubadour, պրովանս.՝ trobador, < trobar – գտնել, ոտանավոր հորինել), բանաստեղծ-երգիչներ միջնադար. Պրովանսում, երգերի հեղինակներ XI–XIII դդ-ում Ֆրանսիայի հվ-ում: Տ-ների քնարերգությանը բնորոշ են նրբազեղությունը, երաժշտականությունը, տաղաչափ. բարդությունն ու բազմազանությունը: Տ-ները երգել են կյանքի բերկրանքը, ասպետ. նրբակիրթ. սերը, ռազմ. սխրանքները: Հայտնի են շուրջ 500 Տ-ներ (Բերտրան դը Բոռն, Բեռնարդ դը Վենտադոռն, Առնաուտ Դանիել և ուր.), որոնց երգերից թարգմանվել են հայ.:

ՏՐՈՒԲԵՑԿՈՅ Եվգենի Նիկոլաևիչ (1863–1920), իշխան, ռուս փիլ., իրավագետ: Ս. Ն. ***Տրուբեցկոյի*** եղբայրը: Զգտել է ուղղափառ քրիստ. գիտակարգի հետ միավորել Վ. Ս. Սոլովյովի «համամիասնականի» մասին ուսմունքը: Աշխ-ները վերաբերում են իմացաբանությանը, կյանքի իմաստի խնդիրներին և Վ. Ս. Սոլովյովի գործերին:

ՏՐՈՒԲԵՑԿՈՅ Նիկիտա Յուրևիչ (1699–1767), իշխան, ռուս. պետ. և ռազմ. գործիչ, գեն-ֆլդմ (1756): 1740-ից՝ Սենատի գեն-դատախազ, 1760–62-ին՝ Ռազմ. կոլեգիայի նախագահ:

ՏՐՈՒԲԵՑԿՈՅ Պավել (Պաուլո) Պետրովիչ (1866–1938), իշխան, քանդ.: Իմպրեսիոնիզմի հիմնադիրներից ռուս. պլաստիկ արվ-ում: Հեղինակ է ծեփածո կտրվածքով պատկերավոր արձանիկների (Լև Տոլստոյի ձիարձանը, 1900), Ալեքսանդր III կայսեր ձիարձանի (բացվել է 1909-ին, Ս. Պետերբուրգ): 1906-ից՝ հիմնականում արտերկրում:

ՏՐՈՒԲԵՑԿՈՅ Սերգեյ Նիկոլաևիչ (1862–1905), իշխան, ռուս փիլ., հրապարակախոս, հաս. գործիչ: Ե. Ն. ***Տրուբեցկոյի*** եղբայրը: Մոսկվայի համալսարանի 1-ին ընտրված ռեկտորը (1905): Իր «կոնկրետ իդեալիզմի» համակարգի միջոցով ձգտել է հաղթահարել ռացիոնալիզմի, էմպիրիզմի և խորհրդապաշտության «միակողմանիությունները»:

ՏՐՈՒԲԵՑԿՈՅԻ ԲԱՍՏԻՈՆ, Պետրոպավլովյան ամրոցի մաս: Կոչվել է Պետրոս I-ի համախոհներից իշխան Յ. Յ. Տրուբեցկոյի անունով: XVIII դ-ի վերջից՝ քաղ. բանտ: 1924-ից՝ թանգարան:

ՏՐՈՒԽԻԼՈ, Տրուխիլո Մոլինա (Trujillo Molina), Ռաֆայել Լեոնիդաս (1891–1961), Դոմինիկյան Հանրապետության բռնապետ՝ 1930–61-ին (1930–38 և 1942–52-ին պաշտոնապես զբաղեցրել է նախագահի պաշտոնը): Սպանվել է դավադրության հետևանքով:

ՏՐՈՒՄԵՆ (Truman) Հարրի (1884–1972), ԱՄՆ 33-րդ նախագահ՝ 1945–53-ին: Դեմոկրատ. կուս-յան գործիչ: Նրա հրամանով 1945-ի օգոստ-ին Ճապոնիայի Հիրոսիմա և Նագասակի ք-ները ենթարկվել են ատոմ. ռմբակոծության:


«ՏՐՈՒՄԵՆԻ ԴՈԿՏՐԻՆԱ», ԱՄՆ-ի կառյան արտաքին քաղ. ծրագիր, որը նախագահ Հ. ***Տրումենը*** շարադրել է 1947-ի մարտին՝ Կոնգրեսին հղած իր ուղերձում: Նախատեսում էր 1947–48 ֆին. տարում, «կոմունիստական վտանգը» կանխելու պատրվակով, որպես «օգնություն» Հունաստանին և Թուրքիային տրամադրել 400 մլն դոլար:

ՏՐՈՆՅԱՅԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՎԱՆՔ, ճարտ. համալիր Գողթն գվռ-ի Նունիս գ-ի մոտակայքում՝ Վանանդի ձորում (այժմ՝ Նախիջևանի Օրդուբադի շրջան)՝ Տրունյաց գետի ափին: Բաղկացած էր 3 եկեղեցուց, գավթից, պարսպին կից վան. շինություններից: Հավանաբար հիմնադրվել է XII դ-ից առաջ: Պահպանվել է միայն միանավ, թաղածածկ եկեղեցին (1687), նորոգվել է 1859-ին:

ՏՈՒ, Ա. Ն. ***Տուպոլևի*** ղեկավարությամբ և նրա անվ. ԿԲ-ում մշակված ինքնաթիռների մակնիշը: 1922–42-ին Տուպոլևի ինքնաթիռները կոչվել են ԱՆՏ:

ՏՈՒԱՐԵԳՆԵՐ (ինքնանվանումը՝ իմոշաղ), բերբերյան ժողդ: Ապրում են Նիգերում (1,4 մլն, 2010), Մալիում (650 հզ.), Ալժիրում (150 հզ.) և Բուրկինա Ֆասոյում (50 հզ.): Խոսում են տուարեգյան լեզուներով: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են:

ՏՈՒԲԱՋԻԴ, իզոնիազիդ, հակատուբերկուլոզ. դեղանյութերի խմբի պատրաստուկ, իզոնիկոտինաթթվի հիդրազիդը: Օգտագործվում է թոքերի, կոկորդի, բերանի խոռոչի, ստամոքսաղիք. համակարգի, ոսկրահոդ. տուբերկուլոզի բուժման համար: Հակացուցված է հոգեկան հիվանդությունների, լյարդի և երիկամների ախտահարումների դեպքերում:



ՏՈՒԳԼԱՍ (Tuglas) Ֆրիդեբերտ (1886–1971), էստոնացի գրող, գրականագետ: Էստ. ԽՍՀ ժող. գրող (1946): Հեղինակ է «Ավազե ժամացույցներ» (1913), «Ճահկատագիր» (1917) նովելների ժող-ների, «Ֆելիքս Օրմուսոն» (1915) վեպի, «Փոքրիկ Իլիմարը» (1937) ինքնակենսագր. վեպի, գրականագիտ. աշխ-ների:

ՏՈՒԴՈՐՈՎՍԿԻ Ալեքսանդր Իլարիոնովիչ (1875–1963), ռուս. ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1933): Աշխ-ները վերաբերում են երկրչփ. օպտիկային, օպտիկ. համակարգերի հաշվարկներին և մշակմանը, օպտիկ. աբերացիայի տեսությանը, սարքաշինության մեջ էՀՄ-ի կիրառմանը:
ԽՍՀՄ Պետ. մրց. (1942, 1946):

ՏՈՒԶ, Տուզ Գյոլյու, անհոսք աղի լիճ Թուրքիայում՝ Անատոլ. սարահարթում՝ 899 *մ* բարձր-յան վրա: Մակերեսը փոփոխվում է 1600–2500 *կմ*^{2}: Ամռանը չորանում է, ծածկվում է 2 *մ* հաստ-յամբ աղի շերտով: Միջին խոր.՝ 2 *մ*: Հատակը տղմապատ է: Արդյունահանվում է աղ:

ՏՈՒԼԱ, ք. ՌԴ Տուլայի մարզում, համանուն մարզի վարչ. կենտրոնը՝ Ուպա գետի ափին: Բն.՝ 496 հզ. (2009): Հիմնադրվել է մոտ 1382-ին:

ՏՈՒԼԱՅԻ ՄԱՐԶ, վտմ ՌԴ Կենտր. դաշն. օկրուգում: Տարածքը՝ 25,7 հզ. *կմ*^{2}, բն.՝ 1,55 մլն (2009): Վարչ. կենտրոնը՝ ***Տուլա***: Ունի 23 շրջան, 19 քաղաք, 25 քտա: Կազմավորվել է 1937-ին:

ՏՈՒԼԱՐԵՄԻԱ, կենդանիների (հաճախ՝ ոչխարների, մորթատու գազանների) և մարդու սուր վարակիչ բնական-օջախ. հիվանդություն: Ախտանշանները. կենդանիների Տ-ի ընթացքը հաճախ թաքնված է, մարդու Տ. բնորոշվում է թոքերի, ավշահանգույցների (բուբոններ), աղիների ևնի ախտահարումներով: Վարակվում են հիվանդ կրծողներից:

ՏՈՒԼԵԲԱԵՎ Սուկան Տուլեբաևիչ (1913–1960), ղազախ կոմպոզիտոր, հաս. գործիչ: ԽՍՀՄ ժող. արտիստ (1959): Ղազախ. կոմպոզիտոր. երաժշտության հիմնադիրներից: Հեղինակ է «Ամանգելդի» (1945, Ե. Գ. Բրուսիլովսկու հետ), «Բիրժան և Սառա» (1946) օպերաների, նաև նվագախմբային և կամեր. ստեղծագործությունների, կինոերաժշտության, երգերի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949):

ՏՈՒԼԵԳԵՆՈՎ Բիբիգուլ Ահմետի (ծ. 1929), ղազախ երգչուհի (կոլորատուր. սոպրանո): ԽՍՀՄ ժող. արտիստ (1967): Սոց. աշխ. հերոս (1991): 1954–56 և 1971-ից՝ Ղազախ. ՕԲԹ-ի, 1956–71-ին՝ Ղազախ. ֆիլհարմոնիայի մեներգչուհի (Զյունանուշիկ՝ Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Զյունանուշիկ», Վիոլետտա, Ջիլդա՝ Ջ. Վերդիի

«Տրավիատա», «Ռիգոլետտո», Ռոզինա՝ Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ», Նորինա՝ Գ. Դոնիցետտիի «Դոն Պասկուալե», ևն): Ղազախ. ԽՍՀ Կ. Բայսեիտովայի անվ. (1966), ԽՍՀՄ (1970) Պետ. մրց-ներ:

ՏՈՒԽԱՉԵՎՍԿԻ Միխայիլ Նիկոլաևիչ (1893–1937), ԽՍՀՄ մարշալ (1935): Ռուսաստանում քաղաքաց. պատերազմի ժամանակ եղել է բանակների հրամ.: 1925–1928-ին՝ ԲԳԿԲ շտաբի պետ, 1928–31-ին՝ Լենինգրադի ՋՕ զորքերի հրամ., 1934-ից՝ պաշտպ-յան ժողկոմի տեղակալ, 1936-ից՝ 1-ին տեղակալ, 1937-ին՝ Մերձվոլգյան ՋՕ զորքերի հրամ.: Աշխ-ները վերաբերում են ռազմավարության, ռազմ. օպերատիվ արվ-ի, տակտիկայի հարցերին: Մեծ ներդրում է արել ռազմագիտ-յան մեջ: Անհիմն բռնադատվել է, գնդակահարվել, հետագայում՝ արդարացվել:

ՏՈՒԽՏ (Althaea), տուխտազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 12 տեսակ, ՀՀ-ում՝ 4՝ Տավուշի, Կոտայքի, Վայոց ձորի, Սյունիքի և այլ մարզերում: Դեղաբույս է: Արմատներն օգտագործում են բժշկության և անասնաբուժության մեջ:

ՏՈՒԽՏԱՎԱՐԴ (Althaearosea L.), **մոլոշավարդ**, տուխտազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 60 տեսակ, ՀՀ-ում՝ 8՝ Արագածոտնի, Շիրակի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի և այլ մարզերում: Շատ տեսակներ գեղազարդիչ են:

ՏՈՒԿԱՆՈ (բետոյա), հնդկաց. ժողղ-ների (կորեգուախե, կուտեո, մակունա և ուր.) խումբ Կոլումբիայում, Բրազիլիայում, Պերուում և Էկվադորում: 51 հզ. մարդ (2015), որի 30 հզ-ը՝ Կոլումբիայում: Խոսում են տուկանո լեզուներով: Մեծ մասը պահպանել է ավանդ. դավանանքը, մի մասը քրիստոնյա է:

ՏՈՒԿԱՆՈ, Հվ. Ամերիկայի հնդկաց. լեզուների խումբ (15–25 լեզու): Տարածված է Արմ. Ամազոնիայում (Կոլումբիա, Բրազիլիա, Էկվադոր, Պերու): Բաժանվում է 3 ճյուղի՝ արմ., կենտր., արլ.:

ՏՈՒՂՐԻԼ ԲԵԿ (բառացի՝ բազե իշխան, մոտ 993–1063), սելջուկ-թուրքերի պետության հիմնադիրը: Եղբոր՝ Չաքիր Բեկի հետ գլխավորել է օղուզների սելջուկ. միավորումը: 1038-ին նվաճել է Խորասանի մի մասը և Նյուշապուհում հռչակվել սուլթան: 1040–55-ի ընթացքում նվաճել է Խորեզմը, Իրանի մեծ մասը, Ատրպատականը, Իրաքը, 1055-ին մտել է Բաղդադ: Տ. Բ-ի օրոք սելջուկները քանիցս արշավել են Հայաստան (1047, 1048, 1054-ին՝ Տ. բ-ի գլխավորությամբ):

ՏՈՒՄԱՆԳԱՆ (կորեերեն), **Տումինցզյան** (չին.), սահման. գետ Չինաստանի և Կորեայի ԺԴՀ-ի ստորին հոսանքում՝ Կորեայի ԺԴՀ-ի և ՌԴ-ի միջև: Երկ՝ 521 *կմ*, ավազանը՝ 41,2 հզ. *կմ*²: Թափվում է Ճապոնծովը: Ափին է Մուսան ք. (Կորեայի ԺԴՀ):

ՏՈՒՄԱՆՈՎ Ալեքսեյ Տիխոնովիչ (1909–1976), նյութագիտ-յան բնագավառի ռուս գիտնական: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1970): Աշխ-ները վերաբերում են բարձրամուր և ջերմակայուն համաձուլվածքներին, գեղազարդիչ և ոչ մետաղ. նյութերին, պաշտպ. պատվածքներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1967):

ՏՈՒՄԱՆՍԿԻ Սերգեյ Կոնստանտինովիչ (1901–1973), ռուս. կոնստրուկտոր: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1968): Սոց. աշխ. հերոս (1957): Տ-ի ղեկավարությամբ ստեղծվել են տարբեր տիպի ինքնաթիռների շարժիչներ: ԽՍՀՄ Պետ. (1946), Լենինյան (1957) մրց-ներ:

ՏՈՒՅ–ՏՈՒՅ, հայկ. հարսանեկան ծիս. պար՝ մեկ շարքով կամ խառը դասավորությամբ: Հիմն. պարաքայլը դանդաղ ու թռիչքներով ոտք փոխելն է, մենապարում՝ նաև օձաձև աջ ու ձախ գնացող քայլերը: Չափը՝ 2/4, տեմպը՝ միջին արագության: Տարածված է Շիրակում, Ջավախքում և այլուր:

ՏՈՒՆԳՈՒՍԱԿԱՆ ԵՐԿՆԱՔԱՐ, **Տունգուսական երևույթ**, վարկած. մարմին, որը, ենթադրաբար, օդ. պայթյունի աոիթ է դարձել 17 (30).06.1908-ին Ռուսաստանի Պոդկամեննայա Տունգուսկա գետի շրջանում: Պայթյունի հզորությունը գնահատվում է 10–40 *Մտ* տրոտիլ. համարժեքով: Պայթյունի հետևանքով ավելի քան 2000 *կմ*² մակերեսով տարածքի ծառերը տապալվել են: Երկնաքարի մնացորդները չեն հայտնաբերվել: Երևույթի ամենահավանական պատճառը գիսավորի միջուկի (կամ նրա բեկորի) անկումն է Երկրի վրա, որը պայթել է մթն-ի ավելի խիտ շերտեր ներխուժելիս:

ՏՈՒՆԳՈՒՄ-ՄԱՆՋՈՒՐԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, լեզվաընտանիք Հս-արլ. Ասիայում: Բաժանված է 2 ճյուղի՝ հս. կամ տունգուս. (Էվենկերեն, Էվեներեն, սոլոներեն, նեգիդալերեն) և հվ. կամ մանջուր. (մանջուրերեն, նանայերեն, ուդեերեն, օրոկերեն, օրոճերեն, ուլչերեն):

ՏՈՒՆԳՐԱՅԻ ԿԱՔԱՎ (Lagopus mutus), փասիանների ընտանիքի թռչուն: Երկ՝ մոտ 35 *սմ*: Փետրավորումն ամռանը խայտաբղետ է, ձմռանը՝ սպիտակ: Որսաթռչուն է:

ՏՈՒՐՇԿԵՎԻՉ Վլադիմիր Մաքսիմովիչ (1904–97), ռուս ֆիզիկոս: ՌԳԱ ակադ (1970): Սոց. աշխ. հերոս (1986): Տ-ի ղեկավարությամբ մշակվել են առաջին ռուս. սիլիցիում. և գերմանիում. դիոդներն ու տրիոդները: Աշակել է (աշխատակիցների հետ) նավերի հակաական. պաշտպ-յունը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942):

ՏՈՒՐՇՊ, Տոպ, Վանտոպ, հնագույն ք. Վանա լճի արլ. ափին: Հիմնադրել է *Մարդուրի Ա.* արքան մ. թ. ա. 827–825-ին՝ այն դարձնելով Վանի (Ուրարտու) թագավորության կենտրոնն ու ռազմ. գլխ. հենակայանը Ասորեստանի դեմ պայքարում: Կոչվել է Տուշպուեա դիցուհու (արեգակի և արդարության աստված Շիվինիի կինը) անունով: Ուշ միջնադարում և հատկապես նոր ժամանակներում Տ. անվանումը մոռացության է մատնվել և պահպանվել է տարածված «Վան» անվանումով:

ՏՈՒՐՔԱՍՏԱՆ, Միտաննիի թագավոր՝ մ. թ. ա. XIV դ-ի կեսին: Ընդարձակել է պետ. սահմանները: Միտաննիական 1-ին պատերազմի ընթացքում պարտության է մատնել խեթերի թագավոր Սուպպիլուլիումա I-ին: Միտաննիի և Խեթ. պետության միջև Միտաննիական 2-րդ և 3-րդ պատերազմների հետևանքով Տ. վերջնականապես կորցրել է իր ազդեցությունը հարևան երկրներում:

ՏՈՒՊԱԿ ԱՄԱՐՈՒ (Tupac Amaru), իսպանացի նվաճողների դեմ պայքարի ղեկ-ները Պերուում: 1. **Տուպակ Ամարու** (1544–1572), գլխավորել է հնդկացիների պայքարը՝ ինկերի պետությունը վերականգնելու նպատակով: 2. **Խ. Գ. Կոնդորկանկի** (մոտ 1740–1781), ընդունել է «Տուպակ Ամարու» անունը: Եղել է հնդկացիների խոշորագույն ապստամբության ղեկ-ը Պերուում (1780–83):

ՏՈՒՊԱՅՆԵՐ (Tupaiidae), *պրիմատների* կարգի կիսակապիկների ընտանիք (առանձնացնում են նաև որպես ինքնուրույն կարգ): Հայտնի է 13 տեսակ: Սարմնի երկ.՝ մինչև 25, պոչինը՝ մինչև 20 *սմ*:

ՏՈՒՊԻ-ԳՈՒԱՐԱՆԻ, հնդկաց. ժողղ-ների (գուարանի, կաինգուա, գուայակի, տուպինամբա, մունդուրուկու, սիրիոնո և ուր.) խումբ Պարագվայում, Բրազիլիայում, Բոլիվիայում, Պերուում, Գայանայում և այլուր: 150 հզ. մարդ (2015): Խոսում են տուպի-գուարանի լեզուներով: Պահպանել են ավանդ. դավանանքը:

ՏՈՒՊԻ-ԳՈՒԱՐԱՆԻ, Հվ. Ամերիկայի ամենատարածված հնդկաց. լեզվաընտանիքներից (68 լեզու, 14-ը՝ մեռած): Տարածված է Բրազիլիայում, Արգենտինայում, Բոլիվիայում, Պարագվայում: Բաժանվում է 2 ճյուղի՝ հս. (տուպի), հվ. (գուարանի):

ՏՈՒՊՈԼԵՎ Ալեքսեյ Անդրեևիչ (1925–2001), ռուս ավիակոնստրուկտոր: ՌԳԱ ակադ. (1984): Սոց. աշխ. հերոս (1972): Ա. Ն. *Տուպոլևի* որդին: Ղեկավարել է մի շարք ռազմ. և քաղաքաց. ինքնաթիռների ստեղծման աշխ-ներ: ԽՍՀՄ Պետ. (1967), Լենինյան (1980) մրց-ներ:

ՏՈՒՊՈԼԵՎ Անդրեյ Նիկոլաևիչ (1888–1972), ռուս ավիակոնստրուկտոր: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1953): Գեն-գնդ-ճարտարագետ (1968): Սոց. աշխ. հերոս (1945, 1957, 1972): Ա. Ա. *Տուպոլևի* հայրը: 1937–41-ին ենթարկվել է անհիմն բռնաճնշումների, 1939–41-ին աշխատել է ՆԳ ժողկոմի կենտր. ԿԲ-ում: Տ-ի ղեկավարությամբ ստեղծվել են ավելի քան 100 տեսակի ռազմ. և քաղաքաց. ինքնաթիռներ, այդ թվում՝ ԱՆՏ-25, ՏՈՒ-104 (առաջին ռեակտիվ մարդատարը), ՏՈՒ-114, -134, -154: Տ-ի ինքնաթիռներով սահմանվել են 78 համաշխ. ռեկորդներ, կատարվել են 28 յուրատիպ, եզակի թռիչքներ (Վ. Պ. *Չկալովը* և Մ. Մ. *Գրոմովը* ԱՆՏ-25-ով Հս. բևեռի վրայով թռել են ԱՄՆ):

ԽՍՀՄ Պետ. (1943, 1948, 1949, 1952, 1972), Լենինյան մրց-ներ (1957):

ՏՈՒՐՆԵՖՈՐ (Tournefort) Ժոզեֆ Պիթոն դե (1656–1708), ֆրանսիացի բուսաբան և ճանապարհորդ: 1700–02-ին այցելել է Թուրքիա, Հայաստան, Վրաստան. փորձել է բարձրանալ Մասիս, բայց չի հաջողել: Առաջինն է կատարել բուսաբ. հետազոտություններ Կովկասում և նկարագրել բուսականության ուղղաձիգ գոտիականությունը: Բույսերի դասակարգման հեղինակ (1694–1700): Կատարել է ուշագրավ ազգագր. ուսումնասիրություններ հայերի և հարևան ժողղ-ների մասին:

ՏՈՒՍՍԵՆ-ԼՈՒՎԵՐՏՅՈՒՐ (Toussaint-Louverture) Ֆրանսուա Դոմինիկ (1743–1803), Հայիթիի անգլիացիների (1793–1803) և ֆրանսիացիների (1802–03) դեմ ազգ-ազատագր. շարժման ղեկ-ներից: Ստրուկի որդի: 1801-ից՝ կղզու ցմահ կառավարիչ: Վերացրել է ստրկատիրությունը: Ձերբակալվել է, տարվել Ֆրանսիա, որտեղ և մահացել է:

ՏՈՒՎԱԼՈՒ (Tuvalu), պետություն Օվկիանիայում՝ Խաղաղ օվկ-ի հվ-արմ-ում: Տարածքը՝ 26 *կմ*², բն.՝ 12,4 հզ. (2013): Մայրաքաղաքը՝ *Ֆունաֆուտի*: Պետ. լեզուները՝ տուվալու և անգլ.: Կառավարման ձևը՝ սահմանադրամիապետ.: Պետության գլուխը Մեծ Բրիտանիայի թագուհին է՝ ներկայացված գեն-նահանգապետով, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Հավատացյալների մեծ մասը քրիստոնյա (բողոքական) է: Բաժանված է 8 վոմ-ի:

Անդամակցում է ՄԱԿ-ին: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 4,9 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է կոպրա, տավարի միս, կակաո, բնափայտ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, դեղորայք, սննդամթերք, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ Տ-ի դոլար (համարժեք է ավստրալ. դոլարին):

Կղզիները հայտնաբերել են անգլիացի ճանապարհորդներ Թ. Գիլբերտն ու Ջ. Մարշալը 1788-ին: 1892-ին Մեծ Բրիտանիան գրավել է կղզիները, որոնք հարևան Գիլբերտի կղզեխմբի հետ կազմել են Գիլբերտի և Էլիսի կղզիների անգլ. գաղութը: Անկախացել է 1978-ին:

ՏՈՒՏԵԼՅԱՆ Վիկտոր Ալեքսանդրի (ծ. 1942), հիգիենիստ-թունաբան: Բժշկ. գիտ. դ-ր, պրոֆ.: ՌԲԳԱ (1997), ՌԳԱ (2013) ակադ.: ՌԴ գիտ. վաստ. գործիչ: 2000–15-ին՝ ՌԲԳԱ սննդի ինստ-ի տնօրեն: Աշխատները վերաբերում են սննդամթերքի թունաբանության, կենսաքիմիայի և սննդ. հումքի հիմն. աղտոտիչների հիգիենական կարգորոշման խնդիրներին: «Մուսցման հարցեր» (ռուս.) ամսագրի գլխ. խմբ.: ՌԴ Կառ-յան մրց. (2008):

ՏՈՒՏՈՒՐ (Tutu) Դեսմոնդ Մպիլո (ծ. 1931), ՀԱՀ-ի Եկեղեցիների խորհրդի գլխ. քարտուղար (1978–84), եպս.: 1975–76-ին՝ Յոհաննեսբուրգի անգլիկան եկեղեցու առաջնորդ: Ակտիվորեն պայքարել է ապարտեիդի և ռասայական խտրականության դեմ:


Խաղաղության Նորելյան մրց. (1984):

ՏՈՒՐ (Bos primigenius կամ Bostaurus primigenius), նախնադար. ցուլ, սնամեջ եղջերավորների ընտանիքի անհետացած երկսմբակավոր կենդանի: Եվրոպ. խոշոր եղջերավոր կենդանիների նախահայրն է: Ապրել է անթրոպոգենի 2-րդ կեսից՝ Արլ. կիսագնդի անտառատափաստաններում: Բարձր.՝ մինչև 2 *մ*, կ. զ.՝ մինչև 800 *կգ*:

ՏՈՒՐԱԿՈ (Tauraco), կկվանմանների կարգի թռչունների ընտանիք: Երկ.՝ 36–70 *սմ*: Փետրավորումը վառ է, շատերի գլխին կա մազանման փետուրներից կազմված փուփուլ: Հայտնի է 18 տեսակ: Թվաքանակը նվազում է:

ՏՈՒՐԲԱԳՆԱՑ, շոգու կամ գազի միջոցով շարժման մեջ դրվող տուրբինով նավ: Առաջին շոգետուրբոագնացը անգլ. «Տուրբինիա»-ն էր (1894): Գազատուրբինագնացները կամ շոգենավերը փոխադրանավատորմում կիրառվել են 1951-ից:

ՏՈՒՐԲԱՊՏՈՒՏԱԿԱՎԻՉ ՇԱՐԺԻՉ, *փուրբոաձնշակային շարժիչ*, որում քարշուժը ստեղծվում է օդապտուտակով: Վերջինս պտտման մեջ է դրվում գազատուրբինով և մասնավորապես ռեակտիվ ծայրափողակից արտահոսող գազի հոսքի ռեակտիվ գործողությամբ (տես նկ.):




Տուրբապտուտակավոր շարժիչի սխեմա. *1. օդային պտուտակ, 2. մուտքային սարք, 3. կոմպրեսոր (ձնշակ), 4. այրման խցիկ, 5. փուրբին, 6. ռեակտիվ ծայրափողակ*

ՏՈՒՐԲԻԴԻՄԵՏՐԻԱ (< լատ. turbidus – պղտոր և ...*մետրիա*), **պղտորաչափություն**, քիմ. վերլուծության լուսաչափ. եղանակ: Հիմնված է հեղուկ ֆազում որոշվող նյութի մասնիկներից առաջացած սուսպենզիայի միջով անցած լույսի ինտենսիվության չափման վրա:

ՏՈՒՐԲԻՆ (ֆրանս.՝ turbine, < լատ. turbo – մրրիկ, բարձրարագ պտույտ), աշխ. օրգանի՝ ռոտորի պտտ. շարժումով և անընդհատ աշխ. շարժընթացով առաջնդ. շարժիչ, որը մատուցվող բանող մարմնի (գոլորշու, գազի կամ ջրի) կինետիկ էներգիան փոխակերպում է մեխ. աշխ-ի (*թիակավոր մեքենա*): Բանող մարմնի շիթն ուղղորդիչ սարքերի միջոցով մատուցվում է ռոտորի շրջանագծով ամրացված թիակներին և, ներգործելով դրանց վրա, պտտման մեջ է դնում ռոտորը: Ըստ գործողության սկզբունքի՝ լինում են ակտիվ և ռեակտիվ, ըստ կառուցվածքի՝ միա- և բազմաստիճան Տ-ներ: Շոգու և գազի Տ-ները լինում են անշարժ (էլ. հոսանքի գեներատորների, ճնշակների շարժարերման համար) և փոխադրովի: Ջր. Տ-ները կառուցում են միայն անշարժ և օգտագործում են ջրէկներում՝ գեներատորների շարժարերման համար:

ՏՈՒՐԲՈՒԵԱԿՏԻՎ ՇԱՐԺԻՉ, տուրբաճնշակ. շարժիչ, որում քարշուժը ստեղծվում է ծայրափողակից արտահոսող գազի հոսքի ռեակտիվ գործողության շնորհիվ (նկ.): Տ. շ-ի տարատեսակ է *փուրբոռեակտիվ երկկոնտուր շարժիչը*:



Տուրբոռեակտիվ շարժիչի սխեմա. *1. մուտքային սարք, 2. կոմպրեսոր (ձնշակ), 3. փուրբին, 4. ուժգնացման խցիկ, 5. ծայրափողակ, 6. այրման խցիկ*

ՏՈՒՐԲՈԼԵՆՏԻԹՅՈՒՆ, տարածության և ժամանակի մեջ բարդ, չկարգավորված ցրող միջավայրի (դաշտի) վարքը, որի դետալները չեն կարող վերարտադրվել ժամանակի մեծ միջակայքերում, նույնիսկ շատ ճշգրիտ տրված սկզբն. և սահման. պայմանների դեպքում: Տ-յան հաստատված ռեժիմում էներգիայի ցրումը փոխհատուցվում է արտաքին աղբյուրից եկող էներգիայով: Տարբերում են թույլ, ուժեղ և զարգացած Տ.: Համակարգը կարգավորված տարածժամանակ. վարքից անցնում է Տ-յան՝ նրա անհավասարակշռության աստիճանի աճման դեպքում, որը բնորոշվում է *Ռեյնոլդսի թվով*:

ՏՈՒՐԳԵՆԵՎ Իվան Սերգեևիչ (1818–1883), ռուս գրող: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1860): Հեղինակ է «Որսորդի հիշատակարանը» (1847–52, հայ.՝ 1931) պատմվածաշարի, «Մումու» (1854, հայ.՝ 1924, 2004-ին Ս. Պետերբուրգում կանգնեցվել է «Մումու»-ի արձանը), «Իջևանատուն» (1855) պատմվածքների, «Ռուդին» (1856, հայ.՝ 1892–93), «Ազնվականների բույնը» (1859, հայ.՝ «Ազնվականներու բոյն մը», 1930), «Նախօրեին» (1860, հայ.՝ 1891), «Հայրեր և որդիներ» (1862, հայ.՝ 1904), «Ծուխ» (1867, հայ.՝ 1963), «Նոր բերք» (1877) վեպերի, «Ասյա» (1858, հայ.՝ 1889), «Գարնանային ջրեր» (1872, հայ.՝ 1972) վիպակների, որտեղ բացահայտել է ազնվականության անկման թեման, պատկերել «ավելորդ մարդկանց» կերպարներ, «Արձակ բանաստեղծություններ» (1882) շարքի և այլ գործերի: Տ. մտերիմ է եղել Միքայել Նալբանդյանի հետ:

ՏՈՒՐԳՈՐ (ուշ լատ.՝ turgor – փքում, ուռած լինելը), բջջաթաղանթի լարված վիճակը. կախված է ներբջջ. հեղուկի և արտաքին լուծույթի օսմոտիկ ճնշումներից և բջջաթաղանթի առաձգականությունից: Ապահովում է բույսի հյուսվածքների առաձգականությունը և կառուցվածք. ամրությունը: Տ. բույսերի ցրվածության և ջր. ռեժիմի վիճակի ցուցանիշ է: Բույսերի թառամումը, ծերացումը և այլ երևույթներ ուղեկցվում են Տ-ի անկմամբ:

ՏՈՒՐԳՈՒՆԵՎԱ. Մուքարամ (1913–1978), բալետի ուզբեկ արտիստուհի, բալետմայստեր, հավաքորդ, բանագետ: ԽՍՀՄ ժող. արտիստ (1959): 1931–54-ին՝ Ուզբ. ՕԲԹ-ի մենապարուհի (Աք-Բիլյակ՝ Ս. Ն. Վասիլենկոյի «Աք-Բիլյակ», Գուլյանդոմ՝ Ե. Գ. Բրուսիլովսկու «Գուլյանդոմ», Զարեմա՝ Բ. Վ. Ասաֆևի «Բախչիսարայի շատրվանը», ևն): 1957-ից՝ Ուզբ. ԽՍՀ «Բախոր» ժող. պարի անսամբլի հիմնադիր-գեղ. ղեկ.: ԽՍՀՄ (1946, 1951, 1973), Ուզբ. ԽՍՀ Համզայի անվ. (1967) Պետ. մրց-ներ:

ՏՈՒՐԴԵՏԱՆՆԵՐ, իբերների ցեղեր Իսպանիայի հվ-ում (Տուրդետանիա մարզ, ժամանակակից՝ Անդալուզիա): Մ. թ. ա. III դ-ի վերջ–II դ-ի սկզբին նվաճել են հռոմեացիները:

ՏՈՒՐԵ (Touré) Ահմեդ Սեկու (1922–1984), Գվինեայի նախագահ՝ 1958-ից, միաժամանակ, 1958–72-ին՝ կառ-յան ղեկ.: 1947-ից՝ Գվինեայի դեմոկրատ. կուս-յան գլխ. քարտուղար: Հեղինակ է Աֆրիկայի ժողդ-ների անկախության պայքարի վերաբերյալ բազմաթիվ աշխ-ների:

ՏՈՒՐԻՆ (Torino), ք. Իտալիայի հս-արմ-ում, համանուն պրովինցիայի և Պիեմոնտ մարզի վարչ. կենտրոնը: Կան ավտոմոբիլաշին. («Ֆիատ» կոնցեռն), սարքաշին., օդանավաշին., մետաղաձուլ., սննդահամի, թեթև արդ-յան և այլ ձեռն-ներ: Բն.՝ 911 հզ. (2012): Տ-ում տեղի են ունեցել XX ձմեռ. օլիմպ. խաղերը (2006): Եղել է Սավոյական (1563–1720), Սարդինյան (ընդմիջումներով՝ 1720–1861) և Իտալ. (1861–65) թագավորությունների մայրաքաղաքը:

ՏՈՒՐԻՇՉԵՎԱ. Լյուդմիլա Իվանովնա (ծ. 1952), ուկրաինացի մարզուհի (սպորտ. մամնամարզություն): ԽՍՀՄ ս. վ. վ. (1970): Օլիմպ. խաղերի բաուակի (1968, 1972, 1976), աշխարհի, Եվրոպայի և ԽՍՀՄ (1970–74) բազմակի չեմպիոն: Վ. Ֆ. *Բորզովի* կինը:

ՏՈՒՐՄԱԼԻՆ, օղաձև բորասիլիկատների ենթադասի միներալ՝ $(Na,Ca)(Mg,Fe,Li)_3Al_6[Si_6O_{18}][BO_3]_3(OH)_4$: Խառնուրդների ձևով պարունակում է K, Fe^{3+}, Cr, Ti, V, Rb: Անգույն, կանաչ, գորշ, վարդագույն, սև, բազմագույն բյուրեղներ են: Փայլը՝ ապակու: Կարծր.՝ 7, խտ.՝ 3–3,4 $գ/սմ^3$: Օժտված է պիրո- և պիեզոէլ. հատկություններով: Լայնորեն տարածված է գրանիտներում, գրանոդիորիտներում: Վարդագույն և բազմագույն տարբերակները 2-րդ կարգի թանկարժեք քարեր են: Տ-ի կարմիր տարատեսակները մինչև XVI դ. կոչվել են «լալ»:

ՏՈՒՐՈՎՍԿԱՅԱ. Մայա Իոսիֆովնա (ծ. 1924), ռուս. թատրոնի և կինոյի քննադատ, թատերագետ, սցենարիստ: Համահեղինակ է «Սովորական ֆաշիզմ» (1966), «...Մեր թատրոնի մասին...» (1975, երկուսն էլ՝ վավերագր.), հեղինակ՝ «Պյոտր Մարտինովիչը և մեծ կյանքի տարիները» (1976, վավերագր-գեղ.) և այլ ֆիլմերի սցենարների, նաև «Մ. Մ. Շտրաուխ» (1952, Բ. Մեդ-

վեղևի հետ), «Օ. Լ. Կնիպպեր–Չեխովա. 1868–1959» (1959), «Բաբանովա. լեգենդը և կենսագրությունը» (1981), «Արվեստների սահմանին. Բրեխտը և կինոն» (1984), «Յոթ ու կես կամ Անդրեյ Տարկովսկու ֆիլմերը» (1991) և այլ գրքերի:

ՏՈՒՐՉԱՆԻՆՈՎԱ Եվդոկիա Դմիտրիևնա (1870–1963), ռուս. դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1943): 1891–ից՝ Փոքր թատրոնի դերասանուհի: Ճանաչվել է Ա. Ն. Օստրովսկու պիեսների բեմադրություններում (տարեց կանանց դերերով): ԽՍՀՄ Պետ. մրց. (1943, 1948):

ՏՈՒՐՊԱԼԵՎ Տիգրան Մելքումի (1918–2003), ֆիզիոլոգ: Կենսբ. գիտ. դ–ր (1961), պրոֆ. (1962): ՌԴԱ ակադ. (1992): Աշակերտել է Խաչատուր *Կոշտոյանցին*: Հայտնաբերել է սինապսներում խոլինախթանիչ կենսընթացների ինքնակարգավորման կենսաքիմ. մեխանիզմները: Ապացուցել է խոլինընկալիչների սպիտակուց. բնույթը և այդ սպիտակուցն առաջինն է հայտնաբերել Հյուսվածք. մզվածքում: Սերբիայի արվ–ների և գիտությունների ակադ–ի արտ. անդամ (1981–ից):

ՏՈՒՐՊԱՆ (Melanita fusca), *բադերի* ընտանիքի ջրլող թռչուն: ՀՀ–ում ամառ. չվահյուր է, հազվագյուտ: Մարմնի երկ.՝ 51–58, թևերի բացվածքը՝ 90–99 *սմ*, կ. զ.՝ 0,9–1,6 *կգ*: Ապրում է քարքարոտ, ժայռոտ ափերով խոշոր լճերում: Սնվում է խեցգետնակերպներով, խխունջներով, ջր. բույսերով: Սևանա լճի մակարդակի նվազման հետևանքով թվաքանակը նվազել է: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ, Տարուբերան, Տարոնոյ աշխարհ, Մեծ Հայքի չորրորդ նահանգը: Արմ–ում սահմանակից էր Ծոփքին և Բարձր Հայքին, հս–ում՝ Այրարատին, արլ–ում՝ Վասպուրականին, հվ–ում՝ Մոկքին և Աղձնիքին: Ընդգրկել է հիմնականում Արածանիի վերին և միջին, ինչպես նաև Երասխի վերին հոսանքների ավազանը (մոտ 25 հզ. *կմ²*): Տ. վարչականորեն բաժանվել է 16 գավ–ի: Տարբեր գավ–ներում իշխել են Սյկունիները, Մամիկոնյանները, Մանդակունիները, Ապահունիները, Զյունականները, Բզնունիները, Գնունիները, Խորխոռունիները և ուրիշ նախարար. տոհմեր: Հայաստանի 1–ին բաժանմամբ (385) Տ. ընկել է Սասանյան Պարսկաստանի, իսկ 591–ի վերարաժանմամբ՝ Բյուզ. կայսրության ազդեցության տակ: VII դ–ում Տ. ասպատակել են արաբ. նվաճողները: VIII–IX դդ–ում Տ–ի տարածքում հաստատվել են արաբ. ցեղեր: Բյուզանդիան X դ–ի 2–րդ կեսին զավթել է Տ. (բացառությամբ՝ Խութի): 1064–ին Տ. զավթել են սելջուկ–թուրքերը, և մինչև XIII դ–ի սկիզբն այն եղել է սելջուկ Շահ ի Արմենների սուլթանության կազմում: XIII–XIV դդ–ում Տ. ասպատակել են թաթար–մոնղ. և թուրք. հրոսակ ցեղերը: 1555 և 1639–ին կնքված թուրք–պարսկ. պայմանագրերով Տ. զավթել է Օսմ. սուլթանությունը: Մինչև ԱՀՊ Տ–ի հիմն. բնակիչները եղել են հայերը: XX դ–ի սկզբին Տ–ի տարածքը մտել է հիմնականում Բիթլիսի և Էրզրումի վիլայեթների մեջ:

ՏՈՒՏԼԻԿ (Tuulik) Յուլո և Յուրի (ծ. 1940), էստոնացի գրող, երկվորյակ եղբայրներ: **Յուլո–ն** հեղինակ է «Գիհին կանգուն է նաև երաշտի ժամանակ» (1974) քնարահրապարակախոս. վավերագր. վեպի, «Նամակներ Ատլանտիկից» (1979) էսսեների, «Ինչպես լսել փոթորկին» (1980), «Բարձր երկինք» (1985) հրապարակախոս. նյութերի, նաև պատմվածքների ժող–ների, **Յուրին**՝ «Հին ամրոց: Աբրոսկայան պատմություններ» (1972), «Անդրծովյան գործ» (1976), «Տղամարդիկ և շները» (1985), «Միայնակ թռչունը ծովի մակերեսին» (2002) և պատմվածքների այլ ժող–ների, «Կարմրառուտ կտցարը» (1989) վիպակի, նաև «Եղջերվի կոտոշի սենյակը» (1983) և այլ պիեսների:

ՏՈՒՖ, փխրաքար, առաջանում է ցամաքում՝ հրաբուխների ժայթքման, շիկացած բեկոր. նյութերի թրծման–ջերմազոդման (հրաբխ. Տ.), և ջր. ավազաններում՝ զանազան նստվածքներով հետագա ցեմենտացման (հրաբխանստվածք. Տ. կամ տուֆիտ) հետևանքով: Տ–ի հարուստ պաշարներ կան Հայկ. հրաբխ. բարձրավանդակում՝ Արագածի լ–զանգվածում, Կարսի սարահարթում, Սյունիքի, Բյուրակնի, Ջավախքի բարձրավանդակներում, Կոտայքի, Եղվարդի սարավանդներում, Շիրակի դաշտում, Արարատյան դաշտի նախալեռն. շրջաններում, Ախուրյան, Փամբակ գետերի հովիտներում ևն:

ՏՓՂԻՄԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՄՆԱԶԻԱ, գործել է 1917–21–ին Թիֆլիսում: Սովորել են առավելապես ծնողազուրկ, նյութապես անապահով ընտանիքների երեխաները: Գոյատևել է նվիրատվությունների շնորհիվ: Ունեցել է երգչախումբ (ղեկ.՝ Ա. Տիգրանյան), թատերախումբ (ղեկ.՝ Ա. Խոսրով), գր. խմբակ (ղեկ.՝ Ա. Վշտունի):

ՏՓՂԻՄԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, X դ–ում Ուխտանես եպս–ի պատվերով վրաց–ից հայ. թարգմ–յուն է արել Կիրակոս քհն.: 1073–ին Մկրտիչ քհն. ընդօրինակել է Շարակնոց: XIII դ–ում փրկագնվել, նորոգվել ու լրացվել են *«Վանանդու Ավետարան»*–ը, Վարդան Արևելցու «Պատմության» անավարտ բնագիրը: Ավետարաններ են պատկերազարդել Զաքարիան (1300, Մտնդ., ձեռ. № 5476), Խաչատուրը (1304, Վնտ. մտնդ., ձեռ. № 109): 1363–ին Տփղիսում ընդօրինակված մատյան է ստացել Հովհան Որոտնեցին (Երուսաղեմի մտնդ., ձեռ. № 1297): Հիշատակվում են կազմարար Սարգիսը, Կարապետ Աղթամարցի, Հովհաննես, Դավիթ, Մկրտիչ, Աստվածատուր գրիչները, մանրանկարիչ Մանուելը, որի մանրանկարներից 4–ը Մտնդ–ում են (ձեռ. № 5784, 6260, 6806, 7986): Գրչությունը նոր վերելք է ապրել XVII դ–ում: Մեզ են հասել Մկրտիչ դպիրի և նրա աշակերտների ընդօրինակած բազմաթիվ մատյաններ, հիշատակվում են նաև Հովհաննես արեղան, Բարսեղը, Աղամալ Զուղայեցին, Միքայելը, Սահակ դպիրը և ուր.: Տ. գ. կ–ի գործունեությունը շարունակվել է նաև XIX դ–ում, թեև այնտեղ արդեն զարգանում էր հայկ. տպագրությունը:

Ր

Ր, հայ. այբուբենի 32–րդ տառը, անվանումը՝ րե: Ունի *զրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր* տառատեսակները: Հայ–ի առաջնալեզվային (ատամնային) թրթռուն ձայնորդ բաղաձայն հնչյուն (հնչույթ) է: Թվային արժեքը՝ 5000:

ՐԱԲՈՒՆԱՊԵՏ, **ուսուցչապետ**, մեծ բարբուն, որը ղեկավարում է մի քանի դասասաց բարբուններ (ուսուցիչ) ունեցող դպրոց–վարդապետարան:

ՐԱՖՖԻ (Մելիք–Հակոբյան Հակոբ Մելիք–Միրզայի, 1835–1888), գրող, հրապարակախոս, հաս. գործիչ: Հայկ. ռոմանտիզմի հիմնադիրներից: Հայ ազգ–ազատագր. շարժման տեսաբանն ու գաղափարախոսը: Հեղինակ է «Անբախտ Հռիփսիմէն» (1872), «Սով» (1872), «Մի օրավար հող» (1873), «Բիբի Շաբաբանի» (1876) և այլ պատմվածքների, «Փունջ» (հ. 1, «Բանաստեղծութիւններ», հ. 2, «Վիպասանութիւններ», 1874) ժող–ի, «Հարեմ» (1874), «Ջալալէդդին» (1878, հրտ.՝ 1884), «Մինը այսպէս, միւսը այնպէս» (1890), «Սալբի» (1911) վիպակների, «Ջահրումար» (1871, հրտ.՝ 1895), «Ոսկի աքաղաղ» (1870, հրտ.՝ 1883) վեպերի, «Դավիթ Բէկ» (1881), «Պարոյր Հայկազն» (1899), «Սամուէլ» (1886) պատմավեպերի, «Խամսայի մելիքութիւններ» (1882) ժամանակագրության, «Պ. Հայկունու կրիտիկան եւ «Կայծերը»» (1883), «Վիպագրութիւնը ռուսահայերի մէջ» (1887) գրաքննադատ. և հրապարակախոս. հոդվածների, «Ճանապարհորդութիւն Թիֆլիսից մինչեւ Ագուլիս» (1878) ուղեգրության, «Հայ կինը եւ հայ երիտասարդութիւնը» (1890), «Արծիւ Վասպուրականի» (1893), «Տաճկահայք» (1895), «Ով էր մեղաւորը» (1895) աշխ–ների: «Խենթը» (1881), «Խաչագողի յիշատակարանը» (1869–70, հրտ.՝ 1882–83), «Կայծեր» (հ. 1, 2, 1883, 1887) վեպերում, վերլուծելով ազատագր. շարժման իրական հանգամանքները և ապարդյուն համարելով Հայկ. հարցի լուծման եվրոպ. դիվանագիտ–յան ուղին, առաջադրել է ազգ–ազատագր. պայքարի գաղափարը: Ր. որակ. նոր աստիճանի է բարձրացրել հայ արձակը՝ մերձեցնելով այն համաշխ. գրկ–յան չափանիշներին:

«ՐԱՖՖԻ», տարեգիրք–օրացույց (1969, 1970, 1984՝ 3 գիրք, Թեհրան): Հիմնադիր–խմբ.՝ Տաճատ *Պողոսյան*:

ՐՈՊԵ, 1. ժամանակի արտահամակարգ. միավոր, նշանակվում է *ր*, 1 *ր* = 60 *վ*: 2. Հարթ անկյան միավոր, հավասար է 1⁄60 *ռադ*, օր.՝ 20′–ն քսան *ր* է:

Ց

Ց, հայ. այբուբենի 33-րդ տառը, անվանումը՝ ցո: Ունի *գրչագիր*, *երկաթագիր*, *բողոքգիր*, *շղագիր*, *նուրբգիր* տառատեսակները: Հայ-ի առաջնալեզվային (լեզվատամնային) պայթաշփ. շնչեղ խուլ բաղաձայն հնչյուն (հնչույթ) է: Թվային արժեքը՝ 6000:

ՅԱԳԱՐԵԼԻ Ավքսենտի Անտոնի (1857–1902), վրացի դրամատուրգ, ռեժ., դերասան: Հեղինակ է «Այլ են հիմա ժամանակները» (բեմ.՝ 1879), «Խանումա» (բեմ.՝ 1882), «Ինչով գաս, նրանով էլ կգնաս» (բեմ.՝ 1902) կենցաղ. թեմաներով կատակերգությունների: Հայկ. բեմերում ներկայացվել և ներկայացվում է «Խանումա» կատակերգությունը, որի մի շարք կերպարներ հայեր են:

ՅԱԴԱՄԱ Համզաթ (1877–1951), ավար բանաստեղծ: Դաղստանի ԻԽՍՀ ժող. բանաստեղծ (1934): Ռ. *Համզաթովի* հայրը: Հեղինակ է «Ադաթների ցախավելը» (1934), «Հանուն հայրենիքի» (1942), «Ընտրանի» (1951) բանաստեղծությունների ժող-ների, «Իմ կյանքը» (1939), «Ասք հովվի մասին» (1949–50) պոեմների, նաև պիեսների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1951):

ՅԱԴԿԻՆ (Zadkine) Օսիպ (1890–1967), ռուս. քանդ.: 1909-ից՝ Ֆրանսիայում: Կրել է կուբիզմի ազդեցությունը («Հովհարով կինը», 1923): Հեղինակ է «Ավերված քաղաք» (1953, Ռոտերդամ), Վ. Վան Գոգին նվիրված (1956, Ուազի Օվեր, Փարիզի մերձակայքում) հուշարձանների և այլ գործերի:

ՅԱԽԱԿԵՌԱՍ (Sonicera), այծատերևազգիների ընտանիքի փաթաթվող կամ կանգուն ցողուններով թուփ: Հայտնի է մինչև 250 (հիմնականում՝ Հս. կիսագնդում, Հվ-ում՝ Անդերում) տեսակ, ՀՀ-ում՝ 5/6 (Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի և այլ մարզերում): Որոշ տեսակներ գեղազարդիչ են. օր.՝ բուրավետ Յ.: Պտուղներն ուտելի են, մեղրատու և դեղաբույս է: 3 տեսակը պահպանվում են:

ՅԱԽԱՅ ՔԱՐ, Յախացքարի վանք, ճարտ. համալիր ՀՀ Վայոց ձորի մարզի Արտաբույնք (Եղեգիս) գ-ից մոտ 6 *կմ* հս-արլ.: Հիմնադրել է *Աբաա Բագրատունի* թագավորը: Համալիրի արմ. խմբում (այժմ՝ կիսավեր) են միանավ թաղածածկ Սբ Հովհաննես եկեղեցին (989) և մատուռը, քառախորան, կենտրոնագմբեթ Սբ Աստվածածին (X դ.) եկեղեցին՝ կից սյունասրահով ու գավթով: Արլ. խմբում կանգուն են 2 (1041) և Սբ Կարապետ գմբեթավոր եկեղեցիները:

«ՅԱԽԱԻԵԼ», երգիծ. շաբաթաթերթ (1915–21, Նյու Յորք, ապա՝ Բոստոն): Տնօրեն-խմբ.՝ Սիմեոն Կյուլո(յան):

«ՅԱԽԱԻԵԼ», երգիծ. երկշաբաթաթերթ (1943–58, Թեհրան): Խմբ.՝ Երվանդ Բազեն (Միրզոյան):

ՅԱԽԱՔԼՈՐՆԵՐ, տես *Սայրեհավեր*:

ՅԱԾՐ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՆԵՐ, կրիոգենային ջերմաստիճաններ, ֆիզիկայում և կրիոգեն. տեխնիկայում 120 K-ից ցածր ջերմաստիճանների տիրույթը: Յ. ջ. ստանալու և պահպանելու համար օգտագործում են հեղուկացված գազեր: Յ. ջ-ում ջերմ. շարժումը ճնշելու շնորհիվ հայտնաբերվել են քվանտ. բնույթի մակրոսկոպիկ երևույթներ՝ հեղուկ հելիումի գոյությունը՝ ընդհուպ մինչև 0 K-ում, գերհոսունությունը, գերհաղորդականությունը:

ՅԱԾՐՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ՊԼԱԶՄԱ, *պլազմա*, որի էլեկտրոնների միջին էներգիան փոքր է ատոմի իոնացմանը բնորոշ պոտենցիալից (< 10 *էՎ*), ջերմաստիճանը սովորաբար՝ $\leq 10^5$ K: Յ. պ. թույլ իոնացած է, գոյություն ունի բնության մեջ (իոնոլորտ, միջմոլորակ. պլազմա, արեգակն. քամի, մոլորակ. միգամածություններ ևն), նաև ստեղծում են հատուկ համակարգերում: Օգտագործում են որպես բանող մարմին որոշակի սարքերում (պլազմատրոններ, մագնիսահիդրոդինամիկ. գեներատորներ, գազապարպում. լազերներ, ջերմաէմիսիոն. փոխակերպիչներ ևն) և պլազմ. տեխնոլոգիաներում (մետաղների եռակցում ու կտրում, վառելիք. էներգիա, մակերևույթների մշակում ևն):

ՅԱԿԱՆՈՎ Վասիլի Մկրտչի (ծ. 1959), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1998), պրոֆ. (2015): «Քենդլ» ԳՀԻ տնօրեն (2004–ից): Աշխ-ները վերաբերում են տարր. մասնիկների նոր արագացման մեթոդներին, քիլվատերային դաշտերին և արագացմանը, փնջերի ֆիզիկային գծային արագացուցիչներում և կոլայդերներում, սինքրոտրոն. լույսի աղբյուրի ֆիզիկային, ազատ էլեկտրոններով լազերներին: Ապագա արագացուցիչների միջազգ. խորհրդի անդամ:

ՅԱՄԱՔԱՅԻՆ ԿԼԻՄԱ, մայրցամաքների ներքին մասերում մթն-ի վրա ցամաք. զանգվածների գերակշռող ազդեցությամբ ձևավորվող կլիմա: Բարեխառն լայն-յուններում Յ. կ. բնութագրվում է օդի ջերմաստիճանի օրական և տարեկան մեծ տատանումներով, արևադարձ. լայն-յուններում՝ համեմատաբար ոչ մեծ տատանումներով ու ավելի շատ տեղումներով: Եղանակն ավելի փոփոխական է, ամպամածությունն ու տեղումների քանակը՝ համեմատաբար փոքր: Առլզն տեղումներ դիտվում են տարվա տաք կեսին: Տարբերում են համեմատաբար չափավոր Յ. կ. (Արմ. Եվրոպայում) և խիստ Յ. կ. (Արլ. Ասիայում):

ՅԱՄԱՔՈՒՐԴ, դրենաժ (ֆրանս.՝ drainage), խոնավ հողերի ցամաքեցման եղանակ՝ ստորգետնյա արհեստ. ջրհոսքերի միջոցով: Կիրառվում է հավելուրդ. խոնավություն ունեցող հողերը ցամաքեցնելու (ցամաքեցման Յ.), աղակալած հողերն աղազերծելու (աղազերծման Յ.), ծանր կավ. հողերում գազափոխանակությունն ուժեղացնելու (օդավորման Յ.) համար: ՀՀ-ում Յ-ներ կիրառում են Արարատյան դաշտի, Գեղարքունիքի, Լոռու մարզերի հողատարածքների հավելուրդ. ջրերը հեռացնելու, հողերն աղազերծելու նպատակով:

ՅԱՆ (Zahn) Հելմուտ Գուստավ (1916–2004), գերմանացի կենսաքիմիկոս: ՌԳԱ արտ. անդամ (1982): Աշխ-ները վերաբերում են սպիտակուցների և պեպտիդների քիմիային: Առաջինն է սինթեզել *ինսուլինը* (1963):

ՅԱՆ, մաշկի և լորձաթաղանթների վրա բծերի, բշտիկների, թարախաբշտիկների, հանգուցիկների ևնի առաջացումն օրգանիզմի վրա արտաքին (ֆիզ., քիմ. ևն) կամ ներքին (վարակիչ հիվանդություն, նյութափոխանակության խանգարում) գործոնների ազդեցության հետևանքով:

ՅԱՆԴԵՐ Ֆրիդրիխ Արտուրովիչ (1887–1933), ռուս. գիտնական և գյուտարար: ԽՍՀՄ հրթիռ. տեխնիկայի ստեղծման պիոներներից: Ստեղծել է ՕՌ-1, ՕՌ-2 ռեակտիվ շարժիչները: Մշակել է «ԳԻՐԴ-Х» հրթիռի նախագիծը: Յ-ի անունով է կոչվել Լուսնի չերևացող կողմի խառնարաններից մեկը:

«ՅԱՆԿ ԱՐԳԵԼՎԱԾ ԳՐՔԵՐԻ» (< լատ. Index Librorum Prohititorum), Հռոմի կաթոլիկ եկեղեցու արգելած (սպառնալիքով) գրքերի ցանկը: Հիմն. նպատակը եղել է հաս-յան հավատի ու բարոյականության դեմ ոտնձգություններից ու աստվածաբան. խոտորումներից պաշտպանելը: Գրաքննություն անցած գրքերը տպագրվել են «Առանց խոչընդոտների» (Nihili obstat), տիտղոսաթերթին՝ «Կարող է տպագրվել» (Imprimatur) գրիֆով: Առաջին ցանկերը հրատարակվել են Նիդեռլանդներում 1529-ին, Վենետիկում՝ 1543-ին, Փարիզում՝ 1551-ին: 1572-ից Հռոմում «Յ. ա. գ.» կազմումով գրաղվել է Յուցակի սուրբ միաբանությունը, 1917-ից՝ Սրբազան խորհուրդը: Լուծարվել է 1966-ին:

ՅԱՆՑ (լատ.՝ Reticulum), երկնքի Հվ. կիսագնդի համաստեղություն՝ Ժամացույց, Հվ. Հիդրա և Ոսկե Ձկնիկ համաստեղությունների միջև: Ամենապայծառ աստղը 3,3 *ա. մ.* է: ՀՀ տարածքից չի երևում:

ՅԱՆՑԱԹԵՎԱՎՈՐՆԵՐ (Neuroptera), միջատների կարգ: Ունեն 4 ցանցանման

թևեր (այստեղից՝ անվանումը), բացվածքը՝ մինչև 12 *սմ*: Հայտնի է 3500 տեսակ, այդ թվում՝ ոսկեաչիկները, մրջնաոյուծնները: ՀՀ–ում հանդիպում են հիմնականում Վայոց ձորի, Սյունիքի, Արագածոտնի, Արարատի, Կոտայքի մարզերում: Մնվում են միջատներով, շատերը ոչնչացնում են այգու և անտառի վնասատուներին:

ՅԱՆՅԱՆՄԱՆ ԳՈՅԱՅՈՒԹՅՈՒՆ, գլխուղեղի կենտր. բաժիններում կառուցվածքների ամբողջութուն՝ տեղադրված ողնուղեղում, երկարավուն ու միջին ուղեղներում և վարոլյան կամրջում: Կարգավորում է ԿՆՀ–ի բարձրադիր բաժինների (ներառյալ մեծ կիսագնդերի կեղևը) գրգռողականության ու լարման մակարդակը, բարձրացնում վեգետատիվ նյարդ. համակարգի ակտիվությունը, մասնակցում մկան. լարման կարգավորմանը, կարևոր նշանակություն ունի քնի և արթնացման մեխանիզմներում:

ՅԱՆՑԵՆԻ, ցանցաթաղանթ, ռետինա (միջնադար. լատ.՝ retina, լատ.՝ rete – ցանց), աչքի ներքին թաղանթ՝ կազմված բազմաթիվ լուսազգաց բջիջներից (ցուպիկներ և շշիկներ): Ց–ի բորբոք. հիվանդությունը կոչվում է **ցանցենաբորբ**:

ՅԱՆՑԿԵՆ, ոսկերչության, արծաթագործության, պղնձագործության, փայտի քանդակազարդման մեջ կիրառվող տեխնիկա. զարդանախշի ուրվագծով կտրելով հեռացվում է ֆոնը: Ց–ով զարդարվել են կենցաղ. առարկաներ (նկարի շրջանակ, ծխախոտատուփ, ինքնաեռ ևն): Հայ ոսկերիչներն ու արծաթագործները Ց. զուգակցել են դրվագման (խաչվառ, Ավետարանի կազմ պատրաստելիս ևն), փորագրման, զուգաթելի և այլ եղանակների հետ: Առարկաները զարդարվել են բուս., երկրչփ., երբեմն՝ խառը զարդանախշերով: Ց–ի ավանդույթները շարունակվում են:

ՅԱՆՔԱՇՐՋԱՆԱՈՒԹՅՈՒՆ, դաշտերում և ժամանակի ընթացքում գղտ. բույսերի և ցեղերի գիտականորեն հիմնավորված հերթագայությունը, որը նպաստում է հողի բերրիության վերականգնմանը և բարձրացմանը:

ՅԱՈ ՊԵՅ (Յզիխուան, 187–226), չին բանաստեղծ, գրկ–յան տեսաբան: Վեյ հարստության կայսր՝ 220–226–ին: Բանաստեղծություններում գովերգել է արշավանքներն ու խնջույքները, խորհրդածել կյանքի ունայնության մասին: Հեղինակ է նաև «Դատողություն դասականների մասին» աշխ–յան:

ՅԱՈ ՍՅՈՒԵՅԻՆ (Յաո Չժան, մոտ 1715–1762 կամ 1724–1763), չին գրող: «Երազը կարմիր դղյակում» (հրտ.՝ 1791) վեպում, որ համապարփակ հանրագիտարան է, ներկայացրել է իր ժամանակաշրջանի Չինաստանի կյանքը:

ՅԱՌԼԻՆՈ (Zarlino) Ջոզեֆֆո (1517–1590), Վերածննդի շրջանի իտալացի կոմպոզիտոր, երաժշտության տեսաբան: 1565–ից ղեկավարել է Վենետիկի Սբ Մարկոս տաճարի կապելլան: Հեղինակ է հարմոնիայինև կոնտրապունկտին վերաբերող հիմնարար աշխ–ների, մեսսաների, մոտետների, մադրիգալների և այլ գործերի:

ՅԱՎ, օրգանիզմի հոգեֆիզիոլոգ. հակազդեցությունն օրգաններում և հյուսվածքներում տեղադրված զգացող նյարդ. վերջույթների ուժեղ գրգռմանը:

ՅԱՏԿԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, հաղորդականության ցածրջերմաստիճան. մեխանիզմ կիսահաղորդիչներում, երբ լիցքի տեղափոխությունը կատարվում է լիցքակիրների քվանտ. թունելային անցումներով («ցատկելով» տարբեր տեղափակված վիճակների միջև): Թոթիչքներն ուղեկցվում են ֆոնոնների կլանումով կամ ճառագայթումով: Առավել ուսումնասիրված է Ց. հ. թույլ լեգիրված բյուրեղ., նաև ամորֆ և ապակենման կիսահաղորդիչներում:

ՅԱՐ (լատ.՝ caesar – *կեսար*), միապետների պաշտոն. անվանումը (տիտղոս) Ռուսաստանում (1547–1721) և Բուլղարիայում (XIX վերջ –1946): 1721–ից ռուս Ց–երը ընդունել են կայսրի տիտղոս, բայց «Ց.» ոչ պաշտոնապես գործածվել է նրան հավասար:

«ՅԱՐ–ԶԱՆԳ», «Արքա–զանգ», XVIII դ–ի ռուս. ձուլարվ–ի հուշարձան Մոսկվայի Կրեմլում. զանգվածը՝ ավելի քան 200 *տ*, բարձր. (մինչև ունկերը)՝ 6,14 *մ*, տրամագիծը՝ 6,6 *մ*: Ձուլել են վարպետներ Ի. Ֆ. Մատորինը և նրա որդի Մ. Ի. Մատորինը 1733–35–ին: 1737–ի հրդեհի ժամանակ «Ց–զ.»–ից պոկվել է 11,5 *տ* կշռով զանգված:

«ՅԱՐ–ԹՆԴԱՆՈՒԹ», «Արքա–թնդանոթ», հրետան. հրանոթ (հրասանդ), XVI դ–ի ռուս. ձուլարվ–ի հուշարձան, ձուլել է վարպետ Ա. Չոխովը 1586–ին: Նախատեսված էր Կրեմլի պաշտպ–յան համար (բայց նրանով երբեք չեն կրակել):

ՅԱՐԻՅԻՆՈ, պալատապուրակ. համալիր (1960–ից՝ Մոսկվայի սահմանագծում): Կառուցվել է (1776–85, ճարտ.՝ Վ. Ի. Բաժենով) որպես Եկատերինա II կայսրուհու նստավայր՝ հինռուս. ճարտ–յան և գոթ. ոճի վերամշակված մոտիվներով (Օպերայի տուն, խոհանոց. մասնաշենք, կամուրջներ, դարպասներ): Կան տաղավարներ, լճակներ: 1993–ից համալիրը «Ցարիցինո» պետ. թանգարան–արգելոցի կազմում է:

ՅԱՐՅՈՎ Միխայիլ Իվանովիչ (1903–1987), ռուս դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1949): Սոց. աշխ. հերոս (1973): 1933–37–ին՝ Մոսկվայի Վ. Մեյերհոլդի անվ. թատրոնի, 1937–ից՝ Փոքր թատրոնի (1985–ից՝ գեղ. ղեկ.) դերասան (Չացկի՝ Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս», Վոժակ՝ Վ. Վ. Վիշնևսկու «Լավատեսական ողբերգություն», Մաթիաս Կլաուզեն՝ (Գ. Հաուպտմանի «Մայրամուտից առաջ», Լիր՝ Վ. Շեքսպիրի «Լիր արքա», ևն):

ԽՍՀՄ Պետ. մրց. (1947, 1969):

ՅԱՒՔԻ (Paliurus), *ժանտափուշ, փշենի*, դժխեմկազգիների ընտանիքի ճյուղավորվող թփեր են: Հայտնի է 8 տեսակ, ՀՀ–ում՝ 1՝ Արագածոտնի, Տավուշի, Վայոց ձորի, Սյունիքի և այլ մարզերում: Առաջացնում են անանցանելի մացառուտներ: Օգտագործում են փշապատ ցանկապատեր պատրաստելու համար:

ՅԱՔՈՒՏԻ ԵԿԵՂԵՑԻ, ճարտ. հուշարձան ՀՀ Սյունիքի մարզի Տաթև գ–ից հս–արլ.՝ Որոտան գետի ափին: Կառուցել է Սյունյաց Հակոբ եպս–ը 932–ին (քանդված են ծածկը և գմբեթը): Եկեղեցու խորանն ուղղանկյուն եզրագծով է, գմբեթակիր կամարները և որմնակամարները՝ պայտաձև, որմնանկարները չեն պահպանվել:

ՅԵԳԵ ՖՈՆ ՄԱՆՏԵՅՖԵԼ Վեռներ Գերմանովիչ (1857–1926), գերմանացի ռուս վիրաբույժ: Գիտ. դպրոցի ստեղծող: Առաջինն է հաջողությամբ ներդրել (1895) զարկերակ. կարը՝ անոթալայնանքի ժամանակ, վիրահատել (1903) սրտի հրազեն. վերքը:

ՅԵԴՆԵՐԱԼ Յումժագիյն (1916–1991), մոնղոլ պետ. գործիչ: ՄԺՀ Աշխ. հերոս (1961), ՄԺՀ հերոս (1966): 1940–54 և 1981–84–ին՝ Մոնղոլիայի ժող. հեղ. կուս–յան (ՄԺՀԿ) ԿԿ գլխ., 1958–81–ին՝ 1–ին քարտուղար, 1952–74–ին՝ ՆԽ, 1974–84–ին՝ ՄԺՀ ժող. Մեծ խուրալի նախագահության նախագահ: 1990–ին վտարվել է ՄԺՀԿ–ից:

ՅԵԴՐԱ (Cedro – ցիտրոն), **ցիտրուսակեղև**, ցիտրուսների (նարինջ, կիտրոն) պտղապատյանի արտաքին գունավորված շերտը: Պարունակում է պտուղների հոտը պայմանավորող եթերայուղեր: Օգտագործում են սննդի արդ–յան, խոհարարության մեջ:

ՅԵՁԻՈՒՄ (Caesium), Cs, տարրերի պարբեր. համակարգի I խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 55, ա. զ.՝ 132,9054, ալկալիական մետաղ է: Անվանումն ստացել է սպեկտրի վառ կապույտ տիրույթում առկա գծերի համար (լատ.՝ caesius – երկնագույն): Արծաթասպիտակավուն է, դյուրահալ, փափուկ՝ ինչպես մոմը, խտ.՝ 1,904 *գ/սմ*^{3}, $t_{եռ.}$՝ 28,4°C: Օդում բոցավառվում է, ջրի հետ փոխազդում պայթյունով: Հիմն. միներալը պոլուցիտն է: Կիրառում են լուսակատոդների պատրաստման ժամանակ և որպես գազակլանիչ, Ց–ի գոլորշիները՝ ՄՀԴ–գեներատորներում, գազ. լազերներում:

ՅԵԼԱՆ, Սելան (Celan, Անչել), Պաուլ (Պոլ, 1920–1970), ավստրիացի բանաստեղծ: 1948–ից՝ Փարիզում: Հեղինակ է «Ամյուսնասափորների ավազը» (1948) ժող–ի, «Կակաչ և հիշողություն» (1952), «Շեմից շեմ» (1955), «Վարդը՝ ոչ մեկին» (1963), «Արևաթել» (1968) գրքերի: Ինքնասպան է եղել: Հայ. թարգմանվել են Ց–ի բանաստեղծություններից:

ՅԵԼԵՍՏԻՆԻՈՒՍ V (Celestinus, ավազանի անունը՝ Պետրոս, մոտ 1215–1294), իտալացի ճգնակյաց վանական Մոնտե Մորրոնոյում (Աբրուցի): Ցելեստինյանների միաբանության հիմնադիրը (1254): 1294–ին ընտրվել է Հռոմի պապ, 5 ամիս անց հրաժարվել է պապ. աստիճանից: Ց. V–ին հաջորդած Բոնիֆացիուս VIII–ը նրան աքսորել է Ֆումոնե ամրոց:

ՅԵԼԻԿՈՎ Ալեքսանդր Իվանովիչ (1904–1984), ռուս մետաղագործ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1964): Սոց. աշխ. հերոս (1964, 1984): Աշակել է գլոցման տեսությունը: Ց–ի ղեկավարությամբ ստեղծվել են յուրահատուկ գլոցահաստոններ և ճնշումով մետաղի մշակման այլ սարքավորումներ:

ԽՍՀՄ Պետ. (1947, 1948, 1951), Լենինյան (1964) մրց–ներ:

ՅԵԼԼԵՐ (Zeller) Էդուարդ (1814–1908), գերմանացի փիլ., անտիկ փիլ–յան պատմաբան: Հեղինակ է «Հույների փիլիսոփայությունը պատմական զարգացման ընթացքում» (հ. 1, 2, 1844, 1852) աշխ–յան:

ՅԵԼՍ, Ավլ Կոռնելիուս Ցելսուս (Aulus Cornelius Celsus), մ. թ. ա. I դ–ի հռոմեացի գրող: Հեղինակ է «Արվեստներ» (պահպանվել է «Բժշկության մասին» տրակտատը) հանրագիտ. աշխ–յան:

ՅԵԼՍԻՈՒՍ (Celsius) Անդերս (1701–1744), շվեդ աստղագետ և ֆիզիկոս: Միջօրեականի աղեղի չափման Լապլանդ. արշավախմբի մասնակից (1736–37): Առաջարկել է (1742) ջերմաստիճան. սանդղակ (տես *Ջերմաստիճանային սանդղակներ*):

ՅԵԼՏԵՐ (Zelter) Կառլ Ֆրիդրիխ (1758–1832), գերմանացի կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ: Մի շարք երաժշտ–ուս. հաստատությունների հիմնադիր–ղեկ. Քյոնիգսբերգում, Բրեսլաուում, Բեռլինում: Հեղինակ է կանտատների, սիմֆո–

նիաների, խմբերգերի, երգերի (մեծ մասը՝ Յ. Վ. Գյոթեի խոսքերով): Սաներից են՝ Ֆ. Մեյերբերը, Ֆ. Մենդելսոնը, Օ. Նիկոլաին:

ՑԵԼՈՒԼՈՒԴ (< ֆրանս. cellulose – թաղանթանյութ և հուն.՝ eidos – նման), պլաստիկացված թաղանթանյութի նիտրատի հիմքով պլաստմասսա: Օգտագործում են սարքերի ապակեպատման, գրասենյակ. պիտույքների, խաղալիքների և այլ իրերի պատրաստման համար: Դյուրավառության պատճառով փոխարինում են այլ պլաստմասսաներով:

ՑԵԽԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, պելոիդոթերապիա (< հուն. pelos – կավ, ցեխ և *թերապիա*), հանքօրգ. ծագման ցեխերով, նաև ցեխանման նյութերով (տորֆ, կավ) *ջերմաբուժության* եղանակ:

ՑԵՂ (կենսբ.), վերտեսակ. տաքսոնոմ. հիմն. կարգը կենսբ. կարգաբանության մեջ: Միավորում է ծագումով մոտիկ տեսակները: Օր.՝ կատուների տարբեր տեսակները (վայրի, եղեգնուտի, բենգալյան ևն) կազմում են կատուների Յ., սոճիների տեսակները (սովոր., սիբիրյան ևն)՝ սոճիների Յ.: Մոտիկ Յ-երը միավորվում են ընտանիքում:

ՑԵՂԱԿԵՆՏՐՈՆՈՒԹՅՈՒՆ, էթնոցենտրիզմ (< հուն. ethnos – ցեղ, ժողովուրդ և centrum – կենտրոն), տես *Էթնոկենտրոնություն*:

«ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ», գիտ. կիսամյա պարբ. (2013–ից, Երևան՝ հայ., անգլ.): ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստ-ի հրտ-յուն: Գլխ. խմբ.՝ Հայկ Դեմոյան:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ՊԱՏԺԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 1948, միջազգ. իրավունքի տեսակետից *ցեղասպանությունը* բնորոշող, ցեղասպանության կանխման նպատակով պատիժ սահմանող փաստաթուղթ: Ընդունել է ՄԱԿ-ի Գլխ. ասամբլեան 1948-ի դեկտ. 9-ին: Ուժի մեջ է մտել 1951-ի հունվ. 12-ին: Համաձայնագրի մշակման և ընդունման գործում էական դեր է խաղացել Ռ. *Լեմկինը*, որը *Նյուրնբերգյան դատավարության* ժամանակ (1945–46) ԱՄՆ-ի մեղադրողի խորհրդականն էր: Օսմ. կայսրությունում 1915–23-ին Հայոց ցեղասպանության ժամանակ տեղի ունեցած բոլոր գործողությունները, իսկ Ադրբեջանի հայ բնակչության նկատմամբ կատարվածը, մասնավորապես՝ 1988-ի փետր-ին Սումգայիթի և 1990-ի հունվ-ին Բաքվի ջարդերը, համապատասխանում են Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին 3 կետերում նշվածներին:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ, գենոցիդ (< հուն. geno – ցեղ, լատ.՝ caedere – սպանել), բնակչության առանձին խմբերի՝ ռասայական, ազգ., էթնիկ. կամ կրոն. հատկանիշներով բնաջնջում: Յ-յան պատժելիությունը սահմանվել է միջազգ. զինվ. դատարանների կանոնադրություններով, ՄԱԿ-ի Գլխ. վեհաժողովի բանաձևերով ու *Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին համաձայնագրով*:

Յ.՝ որպես պետականորեն մշակված քաղ-յուն, հայերի նկատմամբ իրականացրել է Թուրքիան ԱՀՊ-ի ժամանակ (տես *Հայոց ցեղասպանություն*): Վերջին տասնամյակներում այն ճանաչել և դատապարտել են բազմաթիվ պետություններ և միջազգ. կազմ-յուններ:

ՑԵՄԵՆՏ (գերմ.՝ Zement), փոշենման կապակցանյութերի (հիմնականում՝ հիդրավլիկ.) ընդհ. անվանումը, որոնք ջրի (երբեմն՝ ջր. լուծույթների) հետ խառնվելիս առաջացնում են պլաստիկ զանգված, որն աստիճանաբար պնդանալով՝ առաջացնում է քարանման նյութ: Հիմն. տեսակներն են պորտլանդցեմենտը, խարամ. և պուզոլանային, արգնահող., հատուկ (օր.՝ թթվահեստ) Յ-ները: Արդ. արտադր-յունը՝ XIX դ-ից:

ՑԵՄԵՆՏԱՒՄ, 1. *գունավոր մետալուրգիայում*, հիդրոմետալուրգ. շարժընթաց՝ մետաղների միացությունների լուծույթներից մետաղների կորզում՝ ավելի էլեկտրաբացաս. մետաղներով քիմ. վերականգնման եղանակով: Օգտագործում են հիմնականում Cu, Ag, Au կորզելու համար: 2. *Պողպատի*, քիմիա-ջերմ. մշակում՝ պողպատե շինվածքների մակերևույթների դիֆուզային հագեցումն ածխածնով՝ դրանց կարծրությունը, մաշակայունությունը և սահման. ամրությունը բարձրացնելու նպատակով: 3. **Գրունտների**, ճաքավոր և խոշորաբեկորային ավազներով գրունտների ամրացման եղանակ. կատարվում է նրանցում բացված հորատանցքերում ցեմենտ կամ ցեմենտակավ. շաղախ ներմղելու միջոցով:

ՑԵՅՍ, Յայս (Zeiss), Կառլ Ֆրիդրիխ (1816–1888), գերմանացի օպտիկ-մեխանիկոս: 1846-ին Յենայում հիմնել է օպտիկ. սարքերի և օպտիկ. ապակու մշակման արտադր-յան ֆիրմա (այժմ՝ «Կառլ Յեյս», «Carl Zeiss AG»):

ՑԵՆԶ (լատ.՝ census, < censeo – գույքագրում, հաշվեգրում), 1. քաղաքացիների հաշվեգրում Հին Հռոմում՝ ունեցվածքի նշումով, նրանց սոցիալ-քաղ., ռազմ. ու հարկ. դրությունը որոշելու համար: 2. Միջին դարերում Արմ. ու Կենտր. Եվրոպայում՝ գյուղացի. հարկ, բահրա: 3. Սահմանված տարիք. սահմանափակում սահմանադր. իրավունքում, որին հասնելուց հետո միայն տվյալ անձը կարող է մասնակցել հանրաքվեին կամ գրաղեցնել (կամ այլևս չզրաղեցնել) տվյալ պաշտոնը:

ՑԵՆԿՈՎՍԿԻ Լև Սեմյոնովիչ (1822–1887), ռուս. բուսաբան, նախակենդանաբան և բակտերիաբան (ծագումով՝ լեհ): Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1881): Ուսումնասիրել է ստորակարգ բույսերի և կենդանիների անհատ. զարգացումը (օնտոգենեզ): Զարգացրել է բուս. և կենդ. աշխարհների գենետիկ. միասնության վերաբերյալ պատկերացումը, առաջարկել սիբիրախտի դեմ արդյունավետ պատվաստանյութի ստացման մեթոդ:

ՑԵՆՆ, հաճախային միջակայքի արտահամակարգային միավոր, հավասար է 1/1200 օկտավայի: Կիրառվում է բժշկ. ձայնագիտ-յան մեջ:

ՑԵՆՏՐՈՄԵՐ (լատ.՝ centromere), քրոմոսոմի 2 քույր-թելերը (քրոմատիդներ) միացնող պահող հատված: Կիսման ժամանակ Յ-ները քրոմոսոմների շարժումներն ուղղում են դեպի բջիջների բևեռները:

ՑԵՆՈՒՐՈՋՆԵՐ, կենդանիների (ոչխարներ, այծեր, հազվադեպ՝ հորթեր), երբեմն՝ մարդու *ինվազիոն հիվանդություններ* (ցեստոդոզների խմբի հելմինթոզներ): Հարուցում են տենիդ ընտանիքի ժապավենաձև որդերի թրթուրները, որոնք մակաբուծում են ուղեղում և այլ օրգաններում: Ոչխարների ու այծերի Յ-ի ախտանիշներն են ԿՆՀ-ի ախտահարումը, վախլուկության նշանները, կմախք. մկանների ջղաձգումները ևն:

ՑԵՈԼԻԹՆԵՐ, միներալներ: Բյուրեղ. կառուցվածքով ալյումասիլիկատներ են: Ընդգրկում են մոտ 30 միներալ: Առաջացնում են տարատեսակ բյուրեղագիտ. համակարգի թափանցիկ, անգույն բյուրեղներ: Կարծր.՝ 3,5–5,5, խտ.՝ 2–2,3 $գ/սմ^3$: ՀՀ-ում Յ-ի հարուստ պաշարներ կան Տավուշի և Շիրակի մարզերում:

ՑԵՊԵԼԻՆ (Zeppelin) Ֆերդինանդ (1838–1917), դիրիժաբլների գերմանացի կոնստրուկտոր, գեն.: 1900-ից կազմակերպել է կոշտ կառուցվածքով «Ցեպելին» դիրիժաբլների արտադր-յուն:

ՑԵՐՆԻԿԵ (Zernike) Ֆրից (1888–1966), նիդեռլանդացի ֆիզիկոս: Մշակել է միկրոսկոպիայի ֆազահակադրական մեթոդ և ստեղծել ֆազահակադրային միկրոսկոպը: Ներմուծել է կոռելյացիոն ֆունկցիայի գաղափարը: Նոբելյան մրց. (1953):

ՑԵՍՏՈԴՈԶՆԵՐ, մարդու և կենդանիների ինվազիոն հիվանդություններ (հելմինթոզներ), հարուցիչները ժապավենաձև որդերն են (ցիստոդները) և նրանց թրթուրները: Առավել տարածված և վտանգավոր են ցենուրոզը, էխինոկոկոզը, ցիստիցերկոզը:

ՑԵՏԱՆ, հեքսադեկան, $CH_3(CH_2)_{14}CH_3$, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 286,5°C: Դիզել. վառելանյութերի Յ-ային թվի որոշման չափանմուշ է:

ՑԵՏԱՆԱՅԻՆ ԹԻՎ, դիզվառելանյութի ինքնաբոցավառման ունակությունը քանակապես բնորոշող մեծություն: Թվապես հավասար է *ցետանի* (որի Յ. թ. ընդունված է 100) տոկոսային (ըստ ծավալի) պարունակությանը նրա α-մեթիլնավթալինի (Յ. թ.՝ 0) հետ խառնուրդում, որը բոցավառման հատկություններով համարժեք է փորձարկվող վառելանյութին:

ՑԵՏԿԻՆ (Zetkin) Կլարա (1857–1933), գերմանացի քաղ. գործիչ: 1881–1918-ին՝ Գերմանիայի ս-դ. կուս-յան անդամ, II ինտերնացիոնալի կազմակերպիչ և գործիչ: «Սպարտակ միության» կազմակերպիչներից էր: 1919-ին՝ Գերմանիայի կոմկուսի ԿԿ անդամ: 1921-ից Կոմինտերնում ղեկավարել է Կանանց միջազգ. քարտուղարությունը: Յ-ի առաջարկությամբ (1910-ին) է մարտի 8-ը սահմանվել Կանանց միջազգ. օր:

ՑԵՐԱՄԿԻ Վիտոլդ Կառլովիչ (1849–1925), բելառուս աստղագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1914): Զարգացրել է լուսաչափ. հետազոտությունների մեթոդ: Չափել է 500 աստղերի պայծառությունը և Արեգակի աստղ. մեծությունը: Ուսումնասիրել է արծաթագույն ամպերը:

ՑԵՐԵԶԻՆ, սահման. պինդ ածխաջրածինների (C_{38}–C_{55}) խառնուրդ, նման է մոմի, $t_{հալ.}$՝ 68–88°C: Ստանում են հանքամոմի (օզոկերիտ) մաքրմամբ: Կիրառում են թանձր քսայուղերի պատրաստման համար, որպես էլեկտրամեկուսիչ նյութ ևն:

ՑԵՐԵՆԴՈՐԺ Բալինդիին (1868–1928), Սինդոլիայի 1-ին վարչապետը՝ 1923-ից: 1915–19-ին՝ ԱԳ նախարար, 1921-ից, միաժամանակ՝ նաև փոխվարչապետ:

ՑԵՐԵՐԱ, Կերես (Ceres), հողագործության և պտղաբերության աստվածուհին հռոմ. դից-յան մեջ: Հուն. դից-յան մեջ Յ-ին համապատասխանում է *Դեմետրան*:

ՅԵՐԵՐԱ, աստղակերպների (փոքր մոլորակների) գլխ. գոտու ամենախոշոր աստղակերպը: Տրամագիծը՝ 1003 *կմ*, ուղեծրի մեծ կիսառանցքը՝ 2,77 *ա. մ.*, պտտման պարբերությունը՝ 4,6 տարի:

ՅԵՐԻՈՒՄ (Cerium), Ce, տարրերի պարբեր. համակարգի III խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 58, ա. զ.՝ 140,12, լանթանիդ է: Կոչվել է *Յերևրա* փոքր մոլորակի անունով (հայտնագործվել են գրեթե միաժամանակ): Սոխրագույն մետաղ է, խտ.՝ 6,768 $գ/սմ^3$, $t_{հալ.}$՝ 798°C: Հիմն. միներալներն են մոնացիտը և բաստնեզիտը: Յ-ի հավելումը (և նրա համաձուլվածքները լանթանի հետ) լավացնում է պողպատի, չուգունի, ալյումինի, մագնեզիումի համաձուլվածքների հատկությունները:

ՅԵՐԿՈՍՊՈՐՈՉՆԵՐ, բույսերի հիվանդություններ, որոնք հարուցում են մակաբույծ սնկերը: Բնորոշ է բույսերի տերևների վրա տարբեր չափերի, ձևերի և գունավորումների բծերի առաջացումը: Հիվանդության արագ զարգացման դեպքում տերևները չորանում են: Առավել վնասակար և տարածված են ճակնդեղի, կարտոֆիլի, պտղատու մշակաբույսերի և խաղողի վազի Յ.:

ՅԵՅ (Յեցյան) Անտոն (1801–1865), բուսաբան: Դասավանդել է բուսաբ-յուն, գրել մի շարք աշխ-ներ: Հայտնաբերել և ուսումնասիրել է մի քանի բուսատեսակներ, որոնք կոչվել են նրա անունով:

ՅԵՅ Յանոշ, **Յեցյան Հովհաննես** (Czetz Jănos, 1822–1904), 1848–49-ի հունգ. հեղ-յան հայազգի գործիչ, գեն. (1849): Եղել է հեղ. բանակի ԳՇ պետ, հաղթ. կռիվներ է մղել ավստր. բանակի դեմ [Սիբինի (Սիբիուի) ճակատամարտում (11. 03.1849), Բրաշովի մոտ (19. 03. 1849) և այլուր]: Հեղ-յան պարտությունից հետո տարագրվել է Գերմանիա, հետևակ դատապարտվել մահապատժի: Իտալիայում իր կազմակերպած հունգ. լեգեոնով կռվել է Ջ. *Գարիբալդիի* բանակում: 1861-ին ընտանիքով հաստատվել է Բուենոս Այրեսում: Արգենտինայի զինվոր. ակադ-ի հիմնադիր-տնօրեն (1870–74): Նամակագր. կապեր է հաստատել հայագետ Խաչիկ *Ունգուրյանի* հետ: Հեղինակ է «Բեմի արշավանքը Տրանսիլվանիայում 1848–1849 թթ.» (1850), «Արգենտինայի Հանրապետության ռազմական աշխարհագրություն» (1885) աշխ-ների: Բուդապեշտի փողոցներից մեկը կոչվել է Յ-ի անունով:

ՅԵՅԵ (Glossina), **ցե–ցե**, գլոսիդների ընտանիքի արյունածուծ երկթանի միջատների ցեղ: Երկ.՝ 9–14 *մմ*: Հայտնի է մոտ 20 տեսակ՝ Աֆրիկայի արևադարձներում և մերձարևադարձներում: Մի շարք տեսակներ տրիպանոսոմների՝ մարդու քնախտի և ձիերի ու խոշոր եղջերավորների «նագան» հիվանդության հարուցիչների փոխանցողներ են: Աֆրիկայում շատ տարիներ Յ-ի դեմ թունաքիմիկատներով պայքարը ցանկալի արդյունք չի տվել:

ՅԵՅԵՐ իսկական (Tineidae), ցածրակարգ թիթեռների ընտանիք: Հայտնի է մոտ 2 հզ. տեսակ, ՀՀ-ում՝ մոտ 30: Փոքր կամ միջին չափի (4–25 *մմ*) թիթեռներ են՝ նուրբ ծոպավոր թևերով, երկար մազիկներով ծածկված գլխով: Թրթուրներն ապրում են մետաքսահյուս խողովակներում կամ պատյաններում՝ բուս. և կենդ. մնացորդների, սնկերի, քարաքոսերի վրա, շատերը վնասում են մթերքները (հացահատիկի, հացի Յ.), փչացնում բուրդը, մորթին, փետուրները (հագուստի, մուշտակի Յ.): Առավել տարածված են կնգումացեցերի, գոգաթև, մանգաղաթև, ականող և մատնաթև Յ-ի ընտանիքների ներկայացուցիչները:

ՅԵՖԵԻԴՆԵՐ, բաբախող փոփոխ. աստղեր-գերհսկաներ, որոնց պայծառությունը փոփոխվում է 0,5–2 ա. մ. միջակայքում՝ 1–50 (երբեմն՝ մինչև 200) օր պարբերությամբ: Անվանումն ստացել են տիպիկ Յ-ի՝ δ *Յեֆեոսի* անունից:

ՅԵՖԵՈՍ (լատ.՝ Cepheus), **Յեփեոս**, երկնքի հս. կիսագնդի բևեռամերձ համաստեղություն՝ Փոքր Արջ, Վիշապ, Կարապ, Մողես, Կասիոպեա և Ընձուղտ համաստեղությունների միջև: Յ-ի ամենապայծառ աստղը՝ Ալդեմարինը, 2,4 *ա. մ.* է: ՀՀ-ի տարածքից Յ. երևում է ողջ տարին:

ՅԶԲԵՌ, ք. Չինաստանի Շանդուն պրովինցիայում: Բն.՝ 2,7 մլն (2010): Տրանսպորտ. խոշոր հանգույց է, ճենապակու արտադր-յան կենտրոն: Զարգացած են բարձրտեխնոլոգ. ճյուղերը (էլեկտրոն., էլեկտրատեխ., կենսատեխնոլոգ. ևն):

ՅԶԻԳՈՒՆ, ք. Չինաստանի Սիչուան պրովինցիայում: Բն.՝ 684 հզ. (2010): Կերակրի աղի արտադր-յան ավանդ. կենտրոն է:

ՅԶԻՆԱՆ, ք. Չինաստանի արլ-ում՝ Հուանհե գետի ափին, Շանդուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 2,2 մլն (արվարձաններով՝ 3,4 մլն, 2010): Ռետինե շինվածքների արտադր-յան խոշոր կենտրոն է:

ՅԶԻՆԴԵԶԺԵՆ, **Ֆալյան**, ք. Չինաստանի Յզյանսի պրովինցիայում: Բն.՝ 312 հզ. (2010): Ճենապակու արտադր-յան կենտրոն է:

ՅԶԻՆԻՆ, ք. Չինաստանի Շանդուն պրովինցիայում: Բն.՝ 1,24 մլն (2010): Տրանսպորտ. հանգույց է:

ՅԶԻՆՉԺՈՒՈՒ, **Յզինսյան**, ք-նվինգսո Չինաստանի Լյաոնին պրովինցիայում: Բն.՝ 588 հզ. (արվարձաններով՝ 792 հզ., 2010):

ՅԶԻՍԻ, ք. Չինաստանի Հելյունցզյան պրովինցիայում: Բն.՝ 485 հզ. (արվարձաններով՝ 608 հզ., 2010): Ածխարդ-յան կենտրոն է:

ՅԶՅԱԼԻՆՅԶՅԱՆ, գետ Չինաստանում, Յանցզիի ձախ վտակը: Երկ.՝ 1119 *կմ*, ավազանը՝ 160 հզ. $կմ^2$, ջրի միջին ծախսը՝ 2100 $մ^3/վ$: Նավարկելի է Նանչուն ք-ից ներքև: Գետաբերանում է *Չոնգին* ք.:

ՅԶՅԱՄՈՒՍՄ, ք. Չինաստանի հվ-ում՝ Հելյունցզյան պրովինցիայում: Բն.՝ 562 հզ. (արվարձաններով՝ 856 հզ., 2010):

ՅԶՅԱՆ ՉԱՎՀԵ (1904–1986), չին նկարիչ, գրաֆիկ: Գործերում համադրել է եվրոպ. արվ-ի և ազգ. գեղանկարչության գոհուա ձևերը (օգտագործել է միագույն տուշի տեխնիկա), ստեղծել հոգեբ. կերպարներ («Փախստականներ», 1943, թղթագլան, «Բանաստեղծ Դու Ֆուն», 1981, ևն):

ՅԶՅԱՆ ՅԶԵՄԻՆ (ծ. 1926), չին պետ. և կուս. գործիչ: 1993–2003-ին՝ ՉԺՀ նախագահ, 1989–2002-ին՝ Չինաստանի կոմկուսի (ՉԿԿ) ԿԿ գլխ. քարտուղար, 1989–2004-ին՝ ՉԿԿ ԿԿ ռազմ. խորհրդի, 1990–2005-ին՝ Կենտր. ռազմ. խորհրդի նախագահ:

ՅԶՅԱՆ ՅԶԻՆԳՈ (1910–1988), չին պետ. և կուս. գործիչ: *Չան Կայշիի* որդին: 1978–88-ին՝ Չին. Հանրապետության (Թայվան) նախագահ, 1972–78-ին՝ վարչապետ, 1975–88-ին՝ Գոմինդանի կառյան նախագահ:

ՅԶՅԱՆ ՅԻՆ (1914–1991), չին քաղ. գործիչ: *Մաո Յզեդունի* կինը (1938-ից): Եղել է դերասանուհի (բեմ. անունը՝ Լան Պին): 1966–76-ին՝ «կուլտուրական հեղափոխության» ժամանակ, մշակույթի և կրթության հարցերով հատուկ խմբի, 1969-ին՝ Չինաստանի կոմկուսի ԿԿ քաղբյուրոյի անդամ: Մաո Յզեդունի մահից հետո ձերբակալվել է՝ իշխանությունը գրավելու դավադրության մեղադրանքով: 1981-ին դատապարտվել է մահվան. հետագայում դատավճիռը փոխվել է ցմահ բանտարկության: Մահվանից քիչ առաջ ազատվել է բանտարկությունից հիվանդության պատճառով:

ՅԶՅԱՆՄԻՆ, **Յզյանմեն**, ք. Չինաստանի Գուանդուն պրովինցիայում: Բն.՝ 632 հզ. (2010): Տրանսպորտ. հանգույց է, ծով. նավահանգստ:

ՅԶՅԱՆՄԻ, պրովինցիա Չինաստանի հվ-ում՝ Յանցզի գետի ավազանում: Տարածքը՝ 160 հզ. $կմ^2$, բն.՝ 44,6 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ Նանչան:

ՅԶՅԱՆՄՈՒ, պրովինցիա Չինաստանի հվ-ում: Տարածքը՝ 100 հզ. $կմ^2$, բն.՝ 78,6 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ Նանկին:

ՅԶՈՒՆԻ, ք. Չինաստանի Գույչժոու պրովինցիայում: Բն.՝ 1,1 մլն (2010):

ՅԻ ԲԱՅՇԻ (1863–1957), չին նկարիչ, գոհուայի վարպետ: Հեղինակ է բնանկարների, «ծաղիկներ-թռչուններ» ժանրի գործերի («Ընծղուկները ճյուղի վրա», «Խաղողի ողկույզ», «Կնճիթավոր ճպուռը կարմիր տերևի վրա», 1955, ևն): Եղել է նաև գեղագիր և բանաստեղծ: Խաղաղության միջազգ. մրց. (1956):

ՅԻԱՆ, երկցիան, թրթնջկաթթվի երկնիտրիլ, N≡C–C≡N, սուր հոտով, անգույն գազ է, $t_{եռ.}$՝ –21,15°C: Փոքր քանակներով պարունակվում է կոքսագազում և դոմնային գազում: Կիրառվում է քիմ. սինթեզում: Թունավոր է:

ՅԻԱՆԱԿԱՆ ԹԹՈՒ, H–O–C≡N, իզոցիանաթթվի (H–N=C=O) տաուտոմեր ձևը: Ազատ Յ. թ. գոյություն ունի իզո-տաուտոմերի ձևով՝ HNCO, որն անգույն, սուր հոտով, դյուրաշարժ հեղուկ է, $t_{հալ.}$՝ –80 °C, $t_{եռ.}$՝ 23,6°C: Ջր. լուծույթն ուժեղ թթու է: Հեղուկ Յ. թ. պոլիմերվում է՝ առաջացնելով ցիանուրաթթու և գծային պոլիմեր՝ ցիամելիդ $(HOCN)_n$:

ՅԻԱՆԱՄԻԴ, $H_2NC≡N$, ցիանական թթվի ամիդը, անգույն, խոնավածուծ բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 46°C (քայքայվելով): Երկցիաներկամիդի, մելամինի, թիոմիզանյութի և նիտրագուանիդինի արտադր-յան հումք է, Յ-ի ածանցյալները միջանկյալ արգասիքներ են պեստիցիդների սինթեզում: Թունավոր է:

ՅԻԱՆԱՋՐԱԾՆԱԿԱՆ ԹԹՈՒ, **կապտաթթու**, ջրածնի ցիանիդի (HCN) ջր. լուծույթը: Թույլ թթու է, մահացու թունավոր, դառը նշի հոտով հեղուկ: Հաճախ օգտագործվում է որպես թույն՝ առնետների և այլ վնասատուների ոչնչացման համար:

ՅԻԱՆԱՎՈՐՈՒՄ, 1. պողպատե պատրաստվածքների մակերևույթի դիֆուզիոն հագեցումն ածխածնով և ազոտով: Նպատակը պատրաստվածքների ամրության, մաշակայունության և դիմացկունության սահմանի բարձրացումն է: 2. Գունավոր մետաղագործության մեջ՝ հիդրոմետաղագործ. հանքաքարերից և խտանյութերից մետաղների (գլխավորապես՝ Au և Ag) կորզման շարժընթաց, որը հիմնված է ալկալիական մետաղների ցիանիդների թույլ (0,03–0,3 %) լուծույթներում նրանց ընտրող. լուծման վրա:


ՑԻԱՆԵԱՆՆԵՐ, սցիֆոիդների դասի մեդուզաների ցեղ (սցիֆոմեդուզաներ): Հովանոցի տրամագիծը մի քանի *սմ*-ից մինչև 2 *մ* է: Ապրում են Հս. սառուցյալ օվկ-ում և Ատլանտ. ու Խաղաղ օվկ-ների հս. մասերում:

ՑԻԱՆԻԴՆԵՐ, անօրգ. միացություններ, որոնք պարունակում են CN խմբավորում, այդ թվում՝ ***կապտաթթվի*** (ցիանաջրածնական թթվի) HCN աղերը: Կալիումի և նատրիումի Ց. կիրառում են հանքաքարից ոսկի և արծաթ կորզելու համար (ցիանավորում) և գալվանատեխնիկայում: Թունավոր են:

ՑԻԱՆԻՆՆԵՐ, օրգ. միացություններ. պարունակում են տարացիկլիկ ռադիկալներ, որոնք միացած են կենտ թվով մեթինային խմբերից բաղկացած շղթաներով: Կոչվել են այս դասի առաջին միացության՝ **ցիանինի** (հուն.՝ kyanos – կապույտ) անունով: Կախված շղթայում պարունակվող մեթինային խմբերի թվից՝ տարբերում են Ց. (մոնոմեթինցիանիններ), կարբոցիանիններ (եռմեթինցիանիններ) և երկկարբոցիանիններ (պենտամեթինցիանիններ): Ց. պոլիմեթինային ներկեր են:

ՑԻԱՆՈԲԱԿՏԵՐԻԱՆՆԵՐ, տես ***Կապտականաչ ջրիմուռներ***:

ՑԻԱՆՈՒՐԱԹԹՈՒ, 2,4,6-եռհիդրօքսի-1,3,5-տրիազին, տարացիկլիկ թթու է: Կազմված է 2 տաուտոմեր լակտիմային (բուն ցիանուրաթթու, բանաձև 1) և լակտամային (իզոցիանուրաթթու, բանաձև 2) ձևերից: Ց. և նրա ածանցյալներն օգտագործում են որպես պոլիմերների սպիտակեցնող և ախտահանող միջոցներ, որպես սնկասպան, հերբիցիդ, հակաիրային հավելանյութ, սոսինձ: Ց-ի եռալիլ ածանցյալն օգտագործում են պոլիմեր. նյութերը կարելու համար:



1 2

ՑԻԲԼԻԵՎ Վասիլի Վասիլևիչ (ծ. 1954), ռուս. տիեզերագնաց, գեն.-լեյտ.: ՌԴ հերոս (1994): Թռել է «Սոյուզ ՏՄ-17» տիեզերանավով և «Միր» ուղեծր. համալիրով (1993-ի հուլիս–1994-ի հունվ.), «Սոյուզ-ՏՄ-29» (1996) տիեզերանավով:

ՑԻԲՈՒԼՍԿԻ (Cybulski) Զբիգնև (1927–1967), լեհ կինոդերասան: Ճանաչվել է «Մոխիր և ալմաստ» (1958, ռեժ.՝ Ա. Վայդա) ֆիլմով, որտեղ ստեղծել է ժամանակակից հերոսի ողբերգ. կերպար: Նկարահանվել է նաև «Գնացք», «Ինչպես լինել սիրելի», «Հանցագործն ու աղջիկը», «Հառաջ», «Յոհաննություն, մինչ վաղը» և այլ ֆիլմերում: Զոհվել է նկարահանման ժամանակ:

ՑԻԳԱԼ Վլադիմիր Եֆիմովիչ (1917–2013), ռուս. քանդ.: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1978): ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի անդամ (1978): Դիմանկարները («Դ. Բ. Կաբալևսկի», 1966, ևն), հուշարձանները [Դ. Մ. Կարբիշևի, Մաութհաուզեն (Ավստրիա), 1962, Մ. Ա. Եսենինի, Մոսկվա, 1972] առանձնանում են արտահայտիչ պլաստիկ լուծումներով: Մասնակցել է Ռուսաստանի քաղաքաց. պատերազմի և ՀՄՊ-ի հերոսներին նվիրված հուշահամալիրի (Նովոռոսիյսկ, 1982) ստեղծմանը: ԽՍՀՄ Պետ. (1950), Լենինյան (1984) մրց-ներ:

ՑԻԳԱՆՈՎ Դմիտրի Միխայլովիչ (1903–1992), ռուս. ջութակահար: ԽՍՀՄ ժող. արտիստ (1979): Լ. վան Բեթհովենի անվ. քառյակի հիմնադիր-անդամներից (1923–1977): Հանդես է եկել նաև որպես մենակատար: Երկացանկում՝ արևմտաեվրոպացի և ռուս կոմպոզիտորների գործերից: Ց-ին է նվիրված Դ. Դ. Շոստակովիչի 12-րդ կվարտետը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946):

ՑԻԳԼԵՐ (Ziegler) Կառլ (1898–1973), գերմանացի քիմիկոս-օրգանիկ: Հայտնագործել է (1953) տիտան-ալյումին. խառը կատալիզորդ (Ց-ի կատալիզորդ), որի ներկայությամբ ստացվում է տարածակարգավորված պոլիէթիլեն:

Նոբելյան մրց. (1963, Ջ. ***Նատայի*** հետ):

ՑԻԳԼԵՐ–ՆԱՏԱՅԻ ԿԱՏԱԼԻԶՈՐԴՆԵՐ, կոմպլեքս. կատալիզորդներ. առաջանում են անցումային մետաղների միացությունների ($TiCl_4$, $TiCl_3$, $VOCl_3$) և այլ մետաղների (Al, Li, Mg, Zn) ալկիլածանցյալների փոխազդեցությամբ: Կիրառում են օլեֆինների, ցիկլոօլեֆինների, դիեններ, ացետիլեն. միացությունների պոլիմերման, օլեֆինների անհամամասնականացման և հիդրման ժամանակ:

ՑԻԼԻՆՍԿԻ, **Ցիլինսկիս** (Cilinskis), Գուստավ (1931–1992), լատիշ դերասան, ռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1979): 1955–75-ին՝ Ա. Ուպիտի անվ. Լատվիայի դրամայի թատրոնի (Ռիգա) դերասան: Նկարահանվել է «Նոկտյուռն», «Հոգով ուժեղները», «Թատրոն» (հեռուստաֆիլմ) և այլ ֆիլմերում: Նկարահանել է «Սոնատ լճի վրա» (1977, Վ. Բրասլայի հետ), «Գիշերն առանց թռչունների», «Վաղ ժանգոտում» (երկուսն էլ՝ 1980) ֆիլմերը:

ՑԻԿԱԴԱՅԻՆՆԵՐ (Auchenorrhyncha), **կնճիթավոր ճպուռներ**, հավասարաթևների կարգի միջատների ենթակարգ: Երկ.՝ 3–65 *մմ*, թևերի բացվածքը՝ մինչև 18,5 *սմ*: Ճռռոցներ արձակող օրգանն արուի փորիկի հիմքում է: Հայտնի է մոտ 17 հզ. տեսակ: Մի շարք Ց. գտն. բույսերի վնասատուներ են, որոշ տեսակներ փոխանցում են վիրուս. հիվանդություններ (հացազգիների հարսնյակավորում, աշնանացան ցորենի խայտաբղետություն):

ՑԻԿԼԱՅՄԱՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ, ոչ ցիկլիկ մոլ-ներից ցիկլի առաջացման (փակման) ներմոլ. և միջմոլ. ռեակցիաներ: Կարող են իրականացվել տեղակալման, միացման, պոկման, վերախմբավորման ռեակցիաների միջոցով: Գոյություն ունեցող ցիկլի վրա նոր ցիկլի փակմամբ ընթացող ռեակցիաները կոչվում է աննելիրացում (լատ.՝ annellus – օղակիկ):

ՑԻԿԼԻԿ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, պարունակում են փակ օղակով ատոմների շղթա: Լինում են անօրգ. (չեն պարունակում ածխածնի ատոմներ) և օրգ.: Անօրգ. Ց. մ. առաջանում են առանձին ատոմներից (օր.՝ B, S-ից), նաև ատոմ. խմբերից՝ կոորդինացիոն բազմանիստեր: Օրգ. Ց. մ. լինում են կարբոցիկլիկ, որոնցում ցիկլերը բաղկացած են միայն ածխածնի ատոմներից (ալիցիկլիկ և արոմատիկ միացություններ), տարացիկլիկ. ցիկլում ածխածնի ատոմների հետ պարունակում են մեկ կամ մի քանի այլ ատոմներ:


ՑԻԿԼԻԿ ՆՈՒԿԼԵՈՏԻԴՆԵՐ, **նուկլեոտիդներ,** որոնցում ֆոսֆորական թթվի մնացորդը կապված է ռիբոզի հետ 3′ և 5′ դիրքերում՝ առաջացնելով օղակ: Կենդանի բջիջներում կենսաքիմ. շարժընթացների համապիտանի կարգավորիչներ են: Հայտնի են ցիկլիկ ադենոզինմոնոֆոսֆատը (cAMՖ), ցիկլիկ գուանոզինմոնոֆոսֆատը (cGMՖ) և ցիտիդինմոնոֆոսֆատը (cCMՖ):

ՑԻԿԼՈ... (հուն.՝ kyklos – շրջան), բարդ բառերի բաղկացուցիչ. ցույց է տալիս շրջանի, օղակի, ցիկլի (օր.՝ ***ցիկլոտրոն***) առկայություն:

ՑԻԿԼՈԱԼԿԱՆՆԵՐ, հագեցած մոնոցիկլիկ. ածխաջրածիններ՝ C_nH_{2n} ընդհ. բանաձևով, օր.՝ ցիկլոհեքսան: Ց. և նրանց ածանցյալներն ալիցիկլիկ միացություններ են: Որոշ Ց. պարունակվում են հիմնականում նավթում և կոչվում են ***նավթեններ***:

ՑԻԿԼՈԱԼԿԵՆՆԵՐ, չհագեցած մոնոցիկլիկ ածխաջրածիններ՝ C_nH_{2n-2} ընդհ. բանաձևով, այլ կերպ կոչվում են ցիկլոօլեֆիններ: Ց. և նրանց ածանցյալներն ալիցիկլիկ միացություններ են:

ՑԻԿԼՈՒՐԴ (հուն.՝ kyklos – շրջանաձև), հարթ կոր (նկ.), որը գծում է շրջանի P կետը, երբ այդ շրջանն առանց սահելու գլորվում է անշարժ ուղղի վրայով: Ց. ***տրասցենդենտ*** կոր է:



ՑԻԿԼՈՀԵՔՍԱՆ, C_6H_{12}, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 79–81°C: Պարունակվում է նավթում, առաջանում է բենզոլի հիդրման արդյունքում: Կապրոլակտամի ստացման հումք է և լուծիչ:

ՑԻԿԼՈՀԵՔՍԱՆՈԼ, $C_6H_{11}OH$, անգույն, յուղանման, քափուրի հոտով հեղուկ է կամ բյուրեղներ, $t_{հալ.}$՝ 25°C: Կապրոլակտամի արտադր-յան կիսամշակ հումք է և լուծիչ:

ՑԻԿԼՈՀԵՔՍԱՆՈՆ, $C_6H_{10}O$, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 155°C: Կապրոլակտամի և ադիպինաթթվի արտադր-յան կիսամշակ հումք է:

ՑԻԿԼՈՆ (հուն.՝ kyklon – պտտվող), մթն. խոշորամասշտաբ ***պտտահողմ*** կենտրոնում ցածր ճնշումով: Հորիզոն. ուղղությամբ տարածվում է մինչև 2–3 հզ. *կմ*, ուղղահայաց՝ մինչև ներքնոլորտի վերին սահմանը: Երկրի շեղող (***Կորիոլիսի ուժ***) և շփման ուժերի հետևանքով Հս. կիսագնդում Ց. շարժվում է ժամացույցի սլաքին հակառակ, Հվ. կիսագնդում՝ ժամացույցի սլաքի ուղղությամբ: ՀՀ տարածքի եղանակ. ռեժիմի վրա Ց-ներն ազդում են առավելապես գարնանը՝ առաջացնելով տեղումներ, ջերմաստիճանի նվազում, երբեմն՝ կարկուտ ու փոթորիկ: Ցուրտ եղանակին Ց-ների տարածման շրջանում դիտվում են համեմատաբար բարձր ջերմաստիճաններ: ՀՀ տարածք Ց-ները թափանցում են համաչափ արագությամբ (մոտ 30 *մ/վ*) Միջերկր. ծովից, Փոքր Ասիայից և Սև ծովից. տևողությունը տարվա ընթացքում մոտ 96 օր է:

«ՑԻԿԼՈՆ», երկաստիճան («Ց-2») կամ եռաստիճան («Ց-3») հեղուկ. մեկանգամյա կրող հրթիռ, որը ստեղծվել է ԽՍՀՄ-ում՝ տիեզ. սարքերը երկրամերձ ուղեծիր դուրս բերելու համար: Կիրառվում է «Մետեոր» սերիայի ԵԱՀ-ներ արձակելու նպատակով հակահրթիռ. պաշտպ-յան ծրագրի շրջանակներում կատարվող փորձարկումներում:

ՑԻԿԼՈՊԵՆՏԱԴԻԵՆ, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 41°C: Պարունակվում է նավթում: Օգտագործում են միջտասպան նյութեր և մետաղօրգ. միացություններ ստանալու համար:



ՅԻԿԼՈՊՐՈՊԱՆ, **եռմեթիլեն**, C_3H_6, անգույն գազ է, $t_{եռ.}$՝ –32,7°C: Անզգայացնող միջոց է:

ՅԻԿԼՈՏՐՈՆ, պրոտոնների (կամ իոնների) *ցիկլային արագացուցիչ*, որտեղ արագացնող էլ. դաշտի հաճախությունը և մագնիս. դաշտը ժամանակի ընթացքում հաստատուն են: Ց-ի մեջ մասնիկները շարժվում են փոփոխ հարթ պարույրով: Արագացված պրոտոնների մեծագույն էներգիան մոտ 20 *ՄէՎ* է, հատուկ (իզոքորային) Ց-ում՝ մինչև 1 *ԳէՎ*:

ՅԻԿԼՈՏՐՈՆԱՅԻՆ ՌԵԶՈՆԱՆՍ, էլեկտրամագնիս. էներգիայի ռեզոնանս. կլանումը հաստատուն մագնիս. դաշտում գտնվող կիսահաղորդչում կամ մետաղում՝ կապված էներգիայի ուղեծրային մակարդակների միջև լիցքակիրների քվանտ. անցումով: Ց. ռ. հնարավորություն է տալիս որոշելու լիցքակիրների արդյունավետ զանգվածը կիսահաղորդիչներում:

ՅԻԿԼՈՖԱՆՆԵՐ, կամրջակավոր մակրոցիկլ. համակարգեր, որոնք ներառում են միմյանց միացած ալիֆատիկ շղթաներով արոմատիկ և կամ հետերոարոմատիկ օղակներ: Կիրառության հեռանկարային բնագավառներն են ֆերմենտները և ռեցեպտորները, էլեկտրահաղորդիչ օրգ. նյութերը, իոնընտրող. էլեկտրոդները, ֆազ. անցումների կատալիզորդները ևն:

ՅԻՄԲԱԼ (լեհ.՝ cymbaly), հնագույն լար. հարված. երաժշտ. գործիք: Նվագում են 2–5 մետաղե լարերին 2 փայտիկներով հարվածելու միջոցով: Ընդգրկված է ժող. գործիքների նվագախմբում (Հունգարիա, Լեհաստան, Ռումինիա ևն): Ց-ին մոտ է հայկ. սանթուրը:

ՅԻՄԲԱԼԻՍՏ (Zimbalist) Եֆրեմ Ալեքսանդրովիչ (1889–1985), ռուս. ջութակահար, կոմպոզիտոր: 1911-ից՝ ԱՄՆ-ում: Ճանաչվել է Ց. Մ. Բախի, Լ. վան Բեթհովենի, Պ. Ի. Չայկովսկու երկերի ինքնատիպ մեկնաբանություններով: Հեղինակ է կոնցերտների, նվագախմբային և կամեր. երկերի, ջութակի պիեսների, «Ջութակի նվագի դպրոց» (1918) գրքի:

ՅԻՄՄԵՐՄԱՆ (Zimmermann) Յուլիուս Հենրիխ (1851–1922), գերմանացի հրտ.: 1875-ին Ս. Պետերբուրգում հիմնադրել է նոտատպագր. հրտչ-յուն և վաճառատուն, 1882-ին մասնաճյուղ է բացել Մոսկվայում, ապա՝ Լայպցիգում (1929-ից՝ ինքնուրույն), ապա՝ Լոնդոնում, Ռիգայում: 1883-ին Ս. Պետերբուրգում բացել է երաժշտ. գործիքների ֆաբրիկա (Zimmermann): Ներկայում «Zimmermann» երաժշտ. հրտչ-յունն աշխարհում խոշորներից է (գլխ. գրասենյակը՝ Ֆրանկֆուրտում):

ՅԻՄՄԵՐՄԱՆ Ուդո (ծ. 1943), գերմանացի կոմպոզիտոր, դիրիժոր: Դրեզդենում հիմնադրել է ժամանակակից երաժշտության կենտրոն (1986): 1990–2001-ին՝ Լայպցիգի օպերայի գեղ. ղեկ.: Հեղինակ է «Սպիտակ վարդ» (1967), «Լևինի ջրաղացը» (1972), «Ֆիլինը և թռչող արքայադուստրը» (1976), «Հրաշալի մաշկակարուհին» (1981, ըստ Ֆ. Գարսիա Լորկայի) և այլ օպերաների:

ՅԻՄՈԼ, **մեթիլիզոպրոպիլբենզոլ**, արոմատիկ ածխաջրածին. հայտնի են օ-, մ- և պ-իզոմերները: Կարևոր է պ-Ց., որն անգույն, բնորոշ հոտով հեղուկ է , $t_{հալ.}$՝ –67,9°C, $t_{եռ.}$՝ 177,25°C: Ց-ի գոլորշիներն օդում (0,7 %) պայթուցիկ են: Պարունակվում է փշատերև ծառերի խեժում, բևեկնայուղում, եթերայուղերում: Օգտագործվում է որպես լուծիչ և հոտավետ նյութերի արտադր-յան հումք:

ՅԻՆ (Դայցին), մանջուր. կայսեր. հարստություն Չինաստանում 1644–1912-ին: Մանջուրները գրավել են Չինաստանը և հաստատել իրենց կայսեր. տոհմը: Ց. տապալել է Սինհայ. հեղ-յունը (1911–12):

ՅԻՆԳԱ, տես *Լնդահպ*:

ՅԻՆԴԱՈ, ք-նվինգստ Արլ. Չինաստանի Շանդուն պրովինցիայում: Բն.՝ 6 մլն (2014): Տեքստիլ արդ-յան խոշոր կենտրոն է, ծով. առողջարան:

ՅԻՆԵՐ (Milvus), *ճուռակների* ընտանիքի գիշատիչ թռչուններ: Մարմնի երկ.՝ մինչև 70 *սմ*: ՀՀ-ում հայտնի է 2 տեսակ՝ *սև ցին* և *կարմիր ցին*: Ոչնչացնում են կրծողներին, երբեմն հարձակվում են թռչունների վրա:

ՅԻՆԻԿՈՒԹՅՈՒՆ (հուն.՝ kynismos – կինիկների ուսմունքը), նիհիլիստ. վերաբերմունք մշակույթի և բարոյականության հանրընդունելի կանոնների նկատմամբ:

ՅԻՆԼԻՆ, լ-շղթա Չինաստանի արլ-ում, Յանցզի և Հուանհե գետերի ջրբաժանը: Երկ.՝ շուրջ 1000 *կմ*: Բարձր.՝ մինչև 3666 *մ*: Մերձարևադարձ. անտառների (հվ. լանջերին) և բարեխառն գոտու չոր տափաստանների (հս. լանջերին) բնական սահմանն է:

ՅԻՆԿ (Zincum), Zn, պարբեր. համակարգի II խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 30, ա. զ.՝ 65,409: Արծաթասպիտակավուն մետաղ է, խտ.՝ 7,133 $գ/սմ^3$, $t_{եռ.}$՝ 419,6°C: Օդում ծածկվում է օքսիդի պաշտպանիչ թաղանթով: Կարևորագույն միներալը սֆալերիտն է: Կիրառում են ալկալիական մարտկոցներում, ցինկապատման, համաձուլվածքների (օր.՝ արույրի) ստացման համար:

ՅԻՆԿԵՌՆԱԳԵԼ (Zinkernagel) Ռոլֆ (ծ. 1944), շվեյցարացի իմունաբան: Աշխ-ները վերաբերում են հակավարակ. իմունիտետին. հիմնավորել է վիրուսով, իմուն համակարգի բջիջներով ախտահարված բջջի ճանաչման մեխանիզմները: Նորելյան մրց. (1996, Պ. *Դոհերտիի* հետ):

ՅԻՆԿԻ ՀԱՄԱՁՈՒԼՎԱԾՔՆԵՐ, ցինկի հիմքով համաձուլվածքներ: Լեգիրացման համար օգտագործում են հիմնականում Al, Cu, Mg: Ըստ տեխնոլոգ. կատարման՝ տարբերում են դեֆորմացվող և ձուլման, ըստ նշանակման՝ հակաշփական, տպագր. և այլ Ց. հ.: Օգտագործում են կարբյուրատորների և պոմպերի իրանների, սահքի առանցքակալների միջադիրների ձուլման և այլ նպատակներով:

ՅԻՆԿԻ ՍՈՒԼՖԱՏ, $ZnSO_4$, ջրում լուծելի անգույն բյուրեղներ են: Լուծույթներից բյուրեղանում է $ZnSO_4 \cdot 7H_2O$ ցինկի արջասպի ձևով: Օգտագործում են վիսկոզի, ջնարակի արտադր-յուններում, պաշտպանում փայտը նեխելուց:

ՅԻՆԿԻ ՍՈՒԼՖԻԴ, ZnS, անգույն բյուրեղներ են, ջրում գործնականում չեն լուծվում: Բնության մեջ սֆալերիտ և վյուրցիտ միներալն է: Մտնում է լիտոպոնի (սպիտակ ներկ) բաղադրության մեջ: Կիսահաղորդիչ է, լուսակիր:

ՅԻՆԿԻ ՔԼՈՐԻԴ, $ZnCl_2$, անգույն, ջրում լուծելի խոնավածուծ բյուրեղներ են: Կիրառում են փայտի տոգորման, մետաղների զոդման և խածատման ժամանակ, քիմ. սինթեզում:

ՅԻՆԿԻ ՕՔՍԻԴ, ZnO, անգույն բյուրեղներ են, ջրում քիչ լուծելի: Բնության մեջ ցինկիտ միներալն է: Կիրառվում է որպես սպիտակ գունանյութ, կաուչուկների ռետինացման ակտիվացնող, կոսմետիկայում և բժշկության մեջ:

ՅԻՆԿԻՏ, օքսիդների դասի միներալ՝ ZnO: Խառնուրդների ձևով պարունակում է MgO (մինչև 9 %), PbO (մինչև 5,3 %), FeO (մինչև 1,1 %): Նարնջագույն-դեղինից մուգ կարմիր է: Կարծր.՝ 4–5, խտ.՝ 5,7 $գ/սմ^3$: Հանդիպում է մանգան-ցինկի հպումամետամարմ. հանքավայրերում՝ վիլեմիտի, ֆրանկլինիտի հետ, ինչպես նաև կապարի և կապար-ցինկի հանքավայրերում:

ՅԻՆԿՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, մետաղօրգ. միացություններ, որոնցում ցինկի ատոմն անմիջականորեն միացած է ածխածնի ատոմին: Կիրառում են օրգ. սինթեզում, Ց. մ-ի կոմպլեքսներն անցում. մետաղների հալոգենիդների հետ կատալիզորդներ են չհագեցած միացությունների պոլիմերման համար:

ՅԻՆՀԱՅ, պրովինցիա Չինաստանի հս արմ-ում: Տարածքը՝ 720 հզ. $կմ^2$, բն.՝ 5,6 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ Սինին:

ՅԻՆՆԵՄԱՆ (Zinnemann) Ֆրեդ (1907–1997), հրեա կինոռեժ.: 1929-ից՝ ԱՄՆ-ում: «Ուղիղ կեսօրին» (1952), «Օկլոհո՛մա» (1955), «Բոլոր ժամանակների մարդը» (1966), «Ջուլիա» (1977), «Հինգ օր ամռանը» (1982) և այլ ֆիլմերի հիմքում արտակարգ իրավիճակների հաղթահարումն է: «Օսկար» մրց. (1938, 1953, 1967):

ՅԻՆՅԱՉԵ Սուլխան Թեդորի (1925–1991), վրացի կոմպոզիտոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1988): Հեղինակ է «Ոսկե գեղմ» (1952), «Ճգնավորը» (1972) օպերաների, «Դև» (1961, ըստ Մ. Յ. Լերմոնտովի), «Ռիվարես» (1982) բալետների, նաև օպերետների, սիմֆոնիաների, օրատորիաների, պրելյուդների, ռոմանսների, թատրոնի ու կինոյի երաժշտության և այլ գործերի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

ՅԻՆՅԻՆԱՏԻ (Cincinnati), ք. ԱՄՆ-ի Օհայո նահանգ-ում, նվինգստ Օհայո գետի ափին: Բն.՝ 297 հզ. (արվարձաններով՝ 2,1 մլն, 2010): Խոշոր արդ., առևտրաֆին. և մշակութ. կենտրոն է:

ՅԻՈՆ Իլյա Ֆադեևիչ (1842–1912), ռուս. ֆիզիոլոգ: Սիրտանոթ. համակարգի ռեֆլեքսների կարգավորման և հոմեոստազի նյարդ. մեխանիզմների վերաբերյալ ուսմունքի ստեղծողներից: Փարիզում աշխատել է Կ. Բեռնարի լաբորատորիայում, այնուհետև ստեղծել է սեփ. ֆիզիոլոգ. լաբորատորիա: Բացահայտել է (1866, Կ. Ֆ. Վ. Լյուդվիգի հետ) սիրտ-աորտային («դեպրեսոր») նյարդերը և հաստատել դրանց ֆունկցիան:

ՅԻՊԼԱԿՈՎԱ Ելենա Օկտյաբրինա (ծ. 1958), ռուս. կինոդերասանուհի, կինոռեժ.: ՌԴ ժող. արտիստ (2013): Նկարահանվել է «Փայտփորիկի գլուխը չի ցավում», «Արքայազն Ֆլորիզելի արկածները», «Ադամն ամուսնանում է Եվայի հետ», «Մենք քազից ենք» և այլ ֆիլմերում: Նկարահանել է «Եղեգնյա դրախտ» (1989), «Ապավինում եմ քեզ» (1992), «Ընտանեկան գաղտնիքներ» (2001), «Կարմելիտա: Գնչուական կիրք» (2008–09, վերջին երկուսը՝ հեռուստասերիալ) և այլ կինոնկարներ:


ՅԻՊՆԱՎԱՆՔԻ ԴՊՐՈՑ, միջնադար. Հայաստանի կրթ. հաստատություն Արծկե կղզու հվ-ում (կոչվել է նաև Արծկեի, Սբ Ստեփանոս Նախավկայի վանք, Դաստակ): Հիմնվել է 1360-ական թթ-ին՝ Վարդան ճգնավորի ջանքերով: Հայտնի է, որ *Գրիգոր Խլաթեցու* բարունապետությամբ XV դ-ի 2-րդ տասնամյակում

Յիպնավանքում է տեղավորվել Խառաբաստավանքի վարդապետարանը, որն այնուհետև փակվել է: Գրիգոր Խլաթեցին հետագայում Յիպնավանքում հիմնել է իր դպրոցը: Նրան աշակերտել են Հովհաննեսը, Կարապետը, Թովման, Առաքել Բաղիշեցին և ուր., որոնք գրել են իրենց ուսուցչի վարքը: Յ. դ. եղել է նաև հայտնի գրչության կենտրոն, մեզ են հասել Խլաթեցու այստեղ խմբագրած և ընդօրինակած բազմաթիվ ձեռագրեր, որոնցից մի քանիսը (№ 3440, 3414, 5328, 8366 ևն) Մոնղ–ում են:

ՅԻՒՈՋ ԼՅԱՐԴԻ, լյարդի քրոնիկ. հարաճուն հիվանդություն՝ պայմանավորված վիրուս. լյարդաբորբի և այլ վարակիչ հիվանդությունների, թունավորումների (այդ թվում՝ ալկոհոլամոլության) հետևանքով լյարդի ախտահարմամբ: Մարդու Յ. լ. բնորոշվում է լյարդի կառուցվածք. բոլոր տարրերի ախտահարմամբ, նրա մեջ շարակց. հյուսվածքի տարածուն աճով, ֆունկցիոնալ անբավարարությամբ ևն:

ՅԻՍԻ (Յի Սի, 1835–1908), Մանջուրայի կայսրուհի, 1861–1908–ին՝ Չինաստանի փաստացի ղեկ–ը: Եղել է Սյանֆին կայսեր հարճը, 1856–ին որդու՝ գահաժառանգի ծնունդից հետո արքունիքում ձեռք է բերել մեծ հեղինակություն:

ՅԻՄԿԱՐԻՉԵ Նիկոլայ Մաքսիմի (ծ. 1973), բալետի վրացի արտիստ: ՌԴ ժող. արտիստ (2001): 1992–ից՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մենապարող (Շչելկունչիկ, Դեզիրե՝ Պ. Ի. Չայկովսկու «Չչելկունչիկ», «Քնած գեղեցկուհին», Ալբերտ՝ Ա. Ադանի «Ժիզել», Սոլոր՝ Լ. Մինկուսի «Բայադերկա», ևն): ՌԴ Պետ. մրց. (2000, 2002):



ՅԻՄՈՒԴ Դիոկղեոսի (հուն.՝ Kissoeides – բաղեղաձև), 3–րդ կարգի հանրահաշվական կոր (նկ.). $x^3 = y^2 (a - x)$:


ՅԻՍՏ (հուն.՝ kystis – բուշտ), միաբջիջ բույսերի և կենդանիների գոյության ժամանակավոր ձև: Ունի պաշտպ. թաղանթ, որը նույնպես կոչվում է Յ.: Որոշ նախակենդանիներ Յ–ի ձևով կարող են անբարենպաստ պայմաններում գոյություն ունենալ մի քանի տարի:

ՅԻՍՏԵԻՆ, $H_2NCH(CH_2SH)COOH$, ծծումբ պարունակող ամինաթթու: Մտնում է սպիտակուցների, գլուտաթիոնի բաղադրության մեջ: Յ–ի սուլֆհիդրիլ. (–SH) խմբերը կարևոր են բազմաթիվ ֆերմենտների, սպիտակուց. հորմոնների, տոքսինների կենսբ. ակտիվության արտահայտման համար: Օրգանիզմում հեշտությամբ վերածվում է ***ցիստինի***:

ՅԻՍՏԻՆ, ծծումբ պարունակող ամինաթթու, ***ցիստեինի*** դիմեր: Սպիտակուցներում առաջանում է ցիստեինի մնացորդների միջև երկսուլֆիդային (–S–S–) կապերի առաջացման ժամանակ, որոնք ապահովում են սպիտակուց. մոլ–ի տարած. կառուցվածքը:


ՅԻՍՏԻՏԵՐԿՈՋՆԵՐ, ֆինոզներ, մարդու և կենդանիների (խոզեր, խեկ–ներ) ինվազիոն հիվանդություն (ցեստոդոզների խմբի հելմինթոզ): Հարուցվում է տենիիդների խմբի ժապավենաձև որդերի թրթուրներով (ցիստիցերկներ): Ախտանշանները՝ մկանների, գլխուղեղի, աչքի ախտահարում, ԿՆՀ–ի ֆունկցիաների խանգարումներ:

ՅԻՍ–ՏՐԱՆՍ–ԻԶՈՄԵՐԻԱ, երկրչփ. իզոմերիա, քիմ. միացությունների տարած. իզոմերիայի տեսակներից, պայմանավորված է կրկնակի կապի (C=C, C=N) կամ ոչ արոմատիկ ցիկլի (օր.՝ ցիկլոհեքսանի) հարթության նկատմամբ միևնույն (***ցիս***–իզոմեր, I բանաձև) կամ տարբեր (***տրանս***–իզոմեր, II բանաձև) կողմերում տեղակալիչների դասավորության հնարավորությամբ:



ՅԻՏ, **ցիտո**... (հուն.՝ kytos – զետեղարան, այստեղ՝ բջիջ), բարդ բառերի մաս. նշանակում է բուս. կամ կենդ. բջիջներին առնչվելը:

ՅԻՏԻԴԻՆ, նուկլեոզիդ, բաղկացած է ցիտոզինն պիրիմիդինային հիմքի և ռիբոզ ածխաջրի մնացորդներից: Պարունակվում է բոլոր կենդանի օրգանիզմներում՝ ռիբոնուկլեինաթթուների և նուկլեոտիդների բաղադրության մեջ:



ՅԻՏՈՋԻՆ, պիրիմիդինային հիմք: Պարունակվում է բոլոր կենդանի օրգանիզմների նուկլեինաթթուներում (գենետիկ. կոդի 4 տարրերից մեկը):

ՅԻՏՈԼԻԶ, բուս. և կենդ. բջիջների քայքայումը, տես *Լիզիս*:

ՅԻՏՈԿԻՆԻՆՆԵՐ, **կինիններ**, բույսերի հորմոնների խումբ, պուրինի ազոտային հիմքի ածանցյալներ: Մեծացնում են բջիջների բաժանման արագությունը, նպաստում մշակաբույսում աճող բուս. բջիջների տարբերակմանը: Հիմն. ներկայացուցիչը կինետինն է:

ՅԻՏՈՍՏԱՏԻԿ ԴԵՂԱՆՅՈՒԹԵՐ (< ***ցիտո***... և հուն.՝ staticos – դադարեցնող), դեղանյութեր, որոնք շրջափակում են բջիջների բաժանումը, ընկճում իմունիտետի ռեակցիաները: Օգտագործում են առավելապես չարորակ ուռուցքների, ինքնաիմուն. հիվանդությունների բուժման համար:

ՅԻՏՈՔՐՈՄՆԵՐ, շնչառ. ֆերմենտներ, բարդ սպիտակուցներ (հեմոպրոտեիդներ), իրականացնում են էլեկտրոնների և/կամ ջրածնի աստիճան. փոխադրումը (հեմում երկաթի ատոմի արժեքականության հետադարձ փոփոխությունների միջոցով) օրգանիզմում:

ՅԻՏՐԱ (գերմ.՝ Zither), լար. կսմիթ. երաժշտ. գործիք, տարածված էր Վերածննդի և վաղ բարոկկոյի շրջանում: Ունի մետաղ. երկտակ լարեր (մոտ 5–40), փայտե հարթ տանձաձև իրան: Յ–ի տեսակները գործածել են մի շարք ժողդ–ներ (ռուս. գուսլի, կարելոֆինն. կանտելե, ճապոն. կոտո, չին. ցին ևն):

ՅԻՏՐԱԼ, կիտրոնի հոտով դեղնավուն հեղուկ, խտ.՝ 0,89 $գ/սմ^3$, $t_{եռ.}$՝ 228–229°C: Կիտրոն. և այլ եթերայուղերի կարևոր բաղադրիչ է: Սինթետիկ Յ. ստանում են իզոպրենից, ացետոնից և ացետիլենից: Կիրառում են սննդի արդ–յան, օծանելիքի ու Ա վիտամինի արտադր–յան մեջ:

ՅԻՏՐՈՒԼԻՆ, սպիտակուցների բաղադրության մեջ չմտնող ամինաթթու: Կարևոր դեր ունի օրգանիզմում միզանյութի առաջացման ժամանակ և ***արգինինի*** կենսասինթեզում:

ՅԻՏՐՈՒՍԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐ, սատապազգիների ընտանիքի ցիտրուս ցեղի մշտադալար բույսերի խումբ: Մշակում են (28 տեսակ՝ նարնջենի, գրեյպֆրութ, մանդարին, կիտրոն, թուրինջենի ևն) ԱՄՆ–ում, Ճապոնիայում, Չինաստանում, Հնդկաստանում, Պակիստանում, Ավստրալիայում, Միջերկրածովայքում ևն:

ՅԻՐԿՈՆ, սիլիկատների ենթադասի միներալ՝ (Zr, Hf, Th, U, TR, Ca, Na) [(Si, Al, P, S) $X(O,OH_4)$]: Առաջացնում է բյուրեղ. ներփակումներ, հատիկավոր անջատումներ: Գույնը՝ տարերանգ շագանակագույն է: Փայլը՝ ալմաստի: Կարծր.՝ 6,5, խտ.՝ 4–5 $գ/սմ^3$: Հանդիպում է գրանիտոիդային և ալկալային ապարներում: Zr–ի ստացման հանքանյութ է: Օգտագործում են կապարային մետղով ապարների բացարձակ հասակը որոշելու համար: Յ–ի խոշոր կուտակումներ կան ԱՄՆ–ում (Ֆլորիդա), Շրի Լանկայում, Արլ. Ավստրալիայում:

ՅԻՐԿՈՆԱՏՆԵՐ, մետացիրկոնաթթվի՝ H_2ZrO_3, պիրոցիրկոնաթթվի՝ $H_2Zr_3O_7$, օրթոցիրկոնաթթվի՝ H_4ZrO_4, և այլ ցիրկոնաթթուների աղերը: Դժվարահալ են, չեն լուծվում ջրում և ալկալիներում: Կիրառում են բարձրջերմաստիճան. խեցեղենն և հրահեստ նյութեր ստանալու համար:

ՅԻՐԿՈՆԻՈՒՄ (Zirconium), Zr, պարբեր. համակարգի IV խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 40, ա. զ.՝ 91,224: Կոչվել է ***ցիրկոն*** միներալի անունով: Արծաթասպիտակավուն մետաղ է, պինդ, դժվարահալ, խտ.՝ 6,51 $գ/սմ^3$, $t_{հալ.}$՝ 1855°C: Քիմիապես կայուն է (օդում պատվում է ZrO_2 քսիդի պաշտպանիչ շերտով): Արդ. աղբյուրներ են ցիրկոն և բադելեիտ միներալները: Յ–ի հիմքով համաձուլվածքները սարքաշինն. նյութեր են միջուկ. էներգետիկայում: Յ. պարունակող համաձուլվածքները կիրառում են նաև քիմ. ապարատների, վիրաբուժ. գործիքների պատրաստման համար: Յ–ի որոշ համաձուլվածքներ գերհաղորդիչներ են: Յ–ի գերդժվարահալ կարբիդը ($t_{հալ.}$՝ 3800°C), բորիդը, նիտրիդն օգտագործում են կրակակայուն խեցեղենի պատրաստման համար:

ՅԻՐԿՈՆԻՈՒՄԻ ԵՐԿՕՔՍԻԴ, ZrO_2, անգույն բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 2710°C, գործնականորեն չեն լուծվում ջրում և թթուներում: Բնության մեջ բադելեիտ միներալն է: Խեցեղենի, հրահեստ նյութերի, արծնի, հատուկ ապակիների, լազեր. նյութերի բաղադրիչ է, պինդ էլեկտրոլիտ, պիեզոէլեկտրիկ: Յ. ե–ի սինթետիկ միացյուրեղները ֆիանիտներ են:

ՅԻՐԿՈՆԻՈՒՄԻ ԿԱՐԲԻԴ, ZrC, մոխրագույն, դժվարահալ ($t_{հալ.}$՝ 3800°C), բյուրեղ. նյութ է: Օգտագործում են որպես մետաղների դժվարահալ ծածկույթների, հղկանյութերի, խեցանյութերի բաղադրիչ:

ՅԻՐԿՈՆԻՈՒՄԻ ՀԱՄԱՁՈՒԼՎԱԾՔՆԵՐ, ***ցիրկոնիումի*** հիմքով համաձուլվածքներ: Լեգիրման համար օգտագործում են Nb, Ni, Mo և այլ տարրեր, որոնք ներմուծվում են 2–3 % քանակներով: Յ. հ. (Hf–ից մաքրված) ունեն ջերմ. նեյտրոնների կլանման փոքր լայնական հատույթ, կոռոզիակայունություն՝ ագրեսիվ միջավայրերում, բարձր պլաստիկություն և բավարար ամրություն: Համաձուլվածքները հալում են աղեղավոր վակուում. և էլեկտրաճառագայթում. վառարաններում: Կիրառում են միջուկ. էներգետիկայում:

ՅԻՐՑԵ (Circe), **Կիրկե**, Էա կղզու կախարդուհի հուն. դից–յան մեջ: ***Ոդիսևսի*** ուղեկիցներին վերածել է խոզերի, իսկ նրան իր կղզում պահել շուրջ 1 տարի: Փխր. իմաստով՝ նենգ, գայթակղող:

ՅԻՑԵՐՈՆ, **Կիկերոն** (Cicero), Մարկոս Տուլիոս (մ. թ. ա. 106–43), հռոմեացի քաղ. գոր–

ծիչ, հոետոր և գրող: Հանրապետ. կարգի կողմնակիցներից: Յ–ի աշխ–ներից պահպանվել են դատ. և քաղ. 58 ճառ, հոետոր., քաղ. և փիլ. 19 տրակտատ և 800–ից ավելի նամակներ: Յ–ի ստեղծագործությունները սկզբնաղբյուր են Հռոմում քաղաքաց. պատերազմների մասին: Յ. *Տիգրան Բ Մեծի* ժամանակակից միակ հեղինակն է, որի վկայությունները պահպանվել են Հայոց արքայից արքայի մասին:

ՅԻՅԻԱՆՈՎ (Յիցիշվիլի) Պավել Դմիտրիի (1754–1806), վրացի ռազմ. և պետ. գործիչ, ռուս. բանակի հետևազորի գեն. (1804): 1802–ից՝ Վրաստանի գլխ. կառավարչապետ: 1805–ին Յ. Ռուսաստանին է միացրել Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի խանությունները, Շորագյալի սուլթանությունը, իսկ մինչ այդ՝ Իմերեթն ու Մեգրելիան: Սպանվել է Բաքվի խանի հետ բանակցությունների ժամանակ:

ՅԻՅԻԿԱՐ, ք. Չինաստանի Հեյլունցզյան պրովինցիայում, Նունցզյան գետի ափին: Բն.՝ 925 հզ., ագլոմերացիայում՝ ավելի քան 1,4 մլն (2010): Տրանսպորտ. հանգույց է:

ՅԻՅԻԿՅԱՆ Անահիտ Միքայելի (1926–1999), ջութակահար, մանկավարժ, երաժշտագետ: ՀՀ վաստ. արտիստ (1967): Արվեստագիտ. թեկնածու (1970): Պրոֆ. (1982): Երկացանկում գերակշռել են հայ կոմպոզիտորների երկերը, որոնց մեծ մասի մեկնաբանն էր ու խմբագիրը: Հիմնադրել է աղեղն. գործիքների կատարող. արվ–ի և պատմության դասընթացներ: Հեղինակ է «Հայկական աղեղնային արվեստը» (1977, ռուս.՝ 2004) աշխ–յան:

ՅԻՅԻՆ Նիկոլայ Վասիլևիչ (1898–1980), բուսաբան և ընտրասերումնաբան: ԽՍՀՄ ԳԱ (1939), ՀամԳԳԱ (1938) ակադ.: Սոց. աշխ. հերոս (1968, 1978): Աշխ–ները վերաբերում են գղտ. բույսերի հեռավոր խաչասերմանը: Լենինյան (1978) և ԽՍՀՄ Պետ. (1943) մրց–ներ:

ՅԼԱՄԱՐՏ, կորիդա (իսպ.՝ corrida de toros – բառացի՝ ցուլերի վազք), իսպ. ազգ. հանդիսախաղ: Ծագումը կապված է ցուլի հինավուրց պաշտամունքի հետ: XVIII դ–ի սկզբից՝ ավանդ. կրկես. ներկայացում Իսպանիայում, Պորտուգալիայում, Լատ. Ամերիկայի երկրներում և այլուր: Գլխ. գործող անձը ցլամարտիկն է՝ **մատադորը** (matador, < matar – սպանել), որն սպանում է ցուլին սուսերի հարվածով:

ՅԼԻԿԱՁԿՆԵՐ (Gobidae), պերկեսակերպների կարգի ձկների ընտանիք: Հայտնի է 250 սեռ, մոտ 1500 տեսակ: Ապրում է առափնյա զոտու բոլոր տաք ծովերում, հազվադեպ՝ տաք ջրերում: Արդյունագործ. ձուկ է:

ՅՆԱԿԱՅԱՆ Միխայիլ (Միխա) Գրիգորի (1865–1950), վրացի քաղ. գործիչ: 1917–20–ին եղել է ՌՍԴԲ(բ)կ Թիֆլիսի կոմիտեի անդամ, 1921–22–ին՝ ՌԽՖՍՀ–ում ՎԽՍՀ ներկայացուցիչը, 1923–30–ին՝ ՎԽՍՀ Կենտգործկոմի նախագահության, Անդրֆեդերացիայի Կենտգործկոմի նախագահ: Յ–ի անունով է կոչվել Վրաստանի Սենակի ք. 1935–89–ին:

ՅՆԻՆՎԱԼ, *Հարավային Օսիայի* մայրաքաղաքը: Բն.՝ 30,4 հզ. (2015): 1–ին անգամ հիշատակվել է 1398–ին, քաղաք է 1922–ից: Խիստ տուժել է 2008–ի վրաց. ագրեսիայի հետևանքով: 1844–ին Յ–ում ապրել է 100 հայ ընտանիք, 1872–ին՝ 167, 1979–ին՝ 953, 1989–ին՝ 734 հայ: Վրաց–ոս. հակամարտության պատճառով հայերի մեծ մասը հեռացել է, և ներկայում Յ–ում սակավաթիվ հայեր են ապրում: Յ–ի կենտրոնում կանգուն է Սբ Աստվածածին հայկ. եկեղեցին, իսկ հայկ. գերեզմանատանը՝ միանավ, թաղածածկ Սբ Համբարձման եկեղեցին (XVIII դ.):

ՅԽԻՆՎԱԼԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, հայկ. ճարտ. հուշարձան Հվ. Օսիայի Յխինվալ ք–ում: Կառուցվել է 1718–ին: Մեկ զույգ մույթերով գմբեթավոր բազիլիկ է (կանգուն), որի կամարակապ խորշերով բազմանիստ թմբուկը հենվում է խորանի անկյունների և մույթերի միջև ձգվող կամարների վրա: XIX դ–ում կանգնեցվել է քառասյուն զանգակատուն: Ներկայում գործում է որպես ուղղափառ եկեղեցի ՀԱԵ ենթակայությունից դուրս:

ՅՂՆԱՅԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ, ճարտ. համալիր Գողթն գվո–ի Յղնա գ–ում: Հիշատակվում է 1349–ից, սակայն վանքի ներկայի գմբեթավոր բազիլիկ եկեղեցին կառուցվել է XVII դ–ում: Աղոթասրահն ունի հնգանիստ Ավագ խորան: Հվ. մուտքի առջև կանգուն է երկհարկ զանգակատունը, չեն պահպանվել գավիթը, պարիսպը, բնակելի և տնտ. շենքերը:

ՅՄԱԽ (Gypsophila), **սապնարմատ**, մախակազգիների ընտանիքի միամյա և բազմամյա խոտաբույսերի, հազվադեպ՝ կիսաթփերի ցեղ: Հայտնի է 120–140 տեսակ, ՀՀ–ում՝ 14 (բոլոր մարզերում): Շատ տեսակներ գեղազարդիչ են: Յ–ի արմատները հուրան. են: Որոշ տեսակներ օգտագործում են բրդի և մետաքսի լվացման համար: Հայաստանում աճող Յ–ի՝ արեցանման, Թախտաջյանի և մտրականման տեսակները գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

ՅՅԱՆ (Tsien) Ռոջեր (ծ. 1952), ամերիկացի դեղաբան, ֆիզիոլոգ (ծագումով՝ չին): Հետազոտությունները վերաբերում են կանաչ լուսարձակող սպիտակուցներին (անջատել է Օ. *Միմոմուրան*): Գենային ճարտարագիտ–յան միջոցով ստեղծել է դրանց գուն. տարատեսակների համերաշխությունը, որը հնարավորություն է տվել այդ սպիտակուցներն օգտագործելու որպես համապիտանի լուսարձակող նշացույցներ (մարկեր)՝ օրգանիզմում մի քանի կենսբ. շարժընթացների միաժամանակյա ուսումնասիրման ժամանակ:

Նոբելյան մրց. (2008, Օ. Սիմոմուրայի և Մ. *Չալֆիի* հետ):

ՅՅՈՒԻՅ ՅՈՒԱՆ (մ. թ. ա. մոտ 340–մոտ 278), չին բանաստեղծ: Չին ազգ. գրկ. է ներմուծել մարդկային բարձրագույն զգացմունքների, բարոյական իդեալներին հավատարմության մասին թեմաներ («Մահ հանուն հայրենիքի», «Արտասվում եմ Ինու մայրաքաղաքի համար», «Թշվառի ողբը» ևն): Ստեղծել է չուցի բանաստեղծ. ժանրը: Դարձել է զրպարտության զոհ, աքսորվել է, ինքնասպան եղել:

ՅՅՈՒՐԻԽ (Zürich), ք. Շվեյցարիայում, համանուն կանտոնի վարչ. կենտրոնը Լիմատ գետի և Յյուրիխ լճի ափերին: Բն.՝ 371 հզ., արվարձաններով՝ ավելի քան 1 մլն (2010): Խոշոր տրանսպորտ. հանգույց է, աշխարհի ֆինանսապահն. և ապահովագր. գործարարության խոշորագույն կենտրոններից: Որպես քաղաք՝ 1–ին անգամ հիշատակվում է 929–ին, 1218–ին ստացել է կայսեր. քաղաքի կարգավիճակ: Ճարտ. հուշարձաններից են՝ Գրոսմյունստեր (XII–XV դդ.) և Ֆրաումյունստեր (XIII–XIV դդ.) ռոմանո–գոթ. տաճարները, դոմինիկյան քարոզչական (XIII դ., բարոկկո ոճի վերակառուցումները, 1611–14), գոթ. Վասսերկիրխե (1479–84) եկեղեցիները, վերածննդի ոճով ռատուշան (1694–98), բարոկկո ոճի տները (XVII–XVIII դդ.):

Յ–ում հայերը բնակություն են հաստատել XIX դ–ի վերջին: Հիմնականում եղել են վաճառականներ, զգալի թիվ են կազմել նաև Յ–ի համալսարանի հայ ուսանողները: Հայ ազգ. կյանքը Յ–ում աշխուժացել է 1992–ից՝ Հայ հոգևոր խորհրդի ձևավորումից հետո: Ստեղծվել է Հայ մշակույթի կենտրոն: Ներկայում Յ–ում բնակվում է շուրջ 450 հայ:

ՅՅՈՒՐԻԽԻ ԼԻՃ, Շվեյցարիայում՝ Ալպերի հս. ստորոտին՝ հնագույն սառցադաշտի գործունեությամբ առաջացած իջվածքում՝ 406 *մ* բարձր–յան վրա: Մակերեսը՝ 88,5 *կմ*^{2}, երկ.՝ 40 *կմ*, խոր.՝ մինչև 143 *մ*: Լճից արտահոսում է Ահրե գետի վտակ Լիմատը: Նավարկելի է: Կա ձկնորսություն: Ափերին են Յյուրիխ ք–ը և բազմաթիվ առողջարաններ:

ՅՅՈՒՐԻԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Շվեյցարիայի խոշորագույն համալսարանը: Հիմնադրվել է 1833–ին: 2017–ին ուներ ավելի քան 21 հզ. ուսանող:

ՅՅՈՒՐԻԽ–ԼՈՆԴՈՆՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 1959, հույն–թուրք. համաձայնագիր Կիպրոսի Հանրապետության ստեղծման վերաբերյալ (11.02.1959, ստորագրվել է Յյուրիխում) և դրա հիման վրա Լոնդոնում ստորագրված փաստաթուղթ (19.02.1959):

ՅՆԴԵԼԻՈՒԹՅՈՒՆ, **ցնդականություն**, թերմոդինամիկ. մեծություն՝ *իրական գազի* խառնուդների հատկությունները նկարագրելու համար: Հաարավորություն է տալիս *իդեալական գազի* քիմ. պոտենցիալի կախվածությունը ջերմաստիճանից, ճնշումից և համակարգի կազմությունից արտահայտող հավասարումները կիրառել գազի խառնուրդի բաղադրիչի համար՝ այդ հավասարումներում մասնական ճնշումը փոխարինելով Յ–ով:

ՅՆԴՄԱՆ ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆ, ջերմության քանակություն, որն անհրաժեշտ է հաղորդել հաստատուն ճնշման տակ և ջերմաստիճանում գտնվող պինդ մարմնին՝ նրան պինդ վիճակից գազայինի փոխարկելու համար՝ շրջանցելով հեղուկ վիճակը: Նյութի միավոր զանգվածի Յ. ջ. անվանում են տեսակարար Յ. ջ.:

ՅՆԴՈՒՄ, սուբլիմում (լատ.՝ sublimaze – բարձրացնել), նյութի անցումը պինդ վիճակից գազայինի՝ առանց հեղուկանալու (1–ին կարգի ֆազ. անցում): Տեղի է ունենում էներգիայի կլանումով (Յ–ման ջերմություն): Տեխնիկայում Յ. կիրառում են պինդ նյութերը խառնուկներից մաքրելու, տիեզերանավերի ջերմ. պաշտպ–յան համար:

ՅՈԼԱԼԱՊՏԵՐ, փոխադրամիջոցների, գղտ., ճանապարհաշին. և այլ տիպի մեքենաների առջևի, երբեմն՝ հետևի մասի լուսարձակ:

«ՅՈԼՔ», ազգ., հաս., մշակութ. տեղեկատու պարբերաթերթ (1979–84, Ժնև՝ հայ., ֆրանս.): Շվեյցարահայերի միության հրտ–յուն:

ՅՈԿՈԼ, **գետնախարիսխ** (< լատ. zoccolo), շենքի, շինության, հուշարձանի ևնի արտաքին պատից փոքր–ինչ դուրս ցցված մասը հիմքի վրա:

ՅՈՂ, երկրի մակերևույթի, բույսերի, գետնամերձ առարկաների վրա երեկոյան, գիշերը և առավոտյան օդի սառչելու և ջր. գոլորշիների խտանալու հետևանքով (բացաս. ջերմաստիճանի դեպքում առաջանում է եղյամ) առաջացած մանր ջր. կաթիլներ: Յ–ի առաջացմանը նպաստում է պարզկա, անհողմ եղանակը: ՀՀ–ում Յ. լինում է գարնանը և աշնանը, հիմնականում՝ արևածագից առաջ, երբ օդի ջերմաստիճանը հասնում է նվզգն–ի:

ՅՈՂԱՄԱՐԻ ԼԵՌՆԵՐ, ՀՀ Շիրակի մարզում, Բազումի լ–շղթայի արմ. ճյուղավորություններից: Ձգվում է Հողմաջուր և Վարդաղբյուր գետերի վերին հոսանքների ջրբաժանով մինչև Ախուրյան գետի կիրճը: Բարձր.՝ մինչև 2249 *մ* (Սեպ լ.):

ՅՈՂՈՒՆ (Caulis), բարձրակարգ բույսերի վեգետատիվ օրգան. կազմում է ընձյուղի առանցքը և իր վրա կրում տերևները, բողբոջներն ու ծաղիկները: Տարբերում են վերգետնյա և ստորգետնյա, խոտանման և փայտանման, ուղիղ, մագլցող, փաթաթվող և պառկող Յ–ներ: Երկ.՝ 1–1,5 *մմ*–ից (քաղցրահամ ջրերի վույֆիա) մինչև 300 *մ* (արևադարձ. շաքարեղեգնային արմավենիներ), տրամագիծը՝ *մմ*–ի մասերից (մամուռներ) մինչև 41 *մ* (բաոբար, սեքվոյա):

ՅՈՂՈՒՆԱՅԻՆ ԲՋԻՋՆԵՐ, կամբիումային բջիջներ, մտնում են մարդու և կենդանիների վերականգնվող հյուսվածքի կազմի մեջ, կարող են զարգանալ տարբեր բջիջների տեսքով, օր.՝ կաթնասունների արյունաստեղծ հյուսվածքում՝ էրիթրոցիտների, թրոմբոցիտների և լեյկոցիտների: Ապահովում են հյուսվածքի վերականգնումը նրա մի մասի մահանալու դեպքում: Օգտագործում են բջջ. բուժման մեջ՝ վնասված հյուսվածքի վերականգնման, երիտասարդության երկարաձգման, կյանքի բարելավման համար:

ՅՈՂՈՒՆԱՅԻՆ ՆԵՄԱՏՈԴՆԵՐ, Ditylenchus սեռի նեմատոդներ (մոտ 10 տեսակ): Ապրում են բարեխառն գոտում: Ախտահարում են տարբեր բույսերի (հացահատիկ. մշակաբույսեր, սոխ, սխտոր, ճակնդեղ, մորի, ընդավորներ ևն) ցողունը, սոխուկը, ընդերացողունը, պալարները, արմատա– և պալարապտուղները: Նկատվում են բույսերի աճի ընկճում և վերգետնյա օրգանների ձևախախտում:

ՅՈՂՈՒՆԱՋՔԱՎՈՐՆԵՐ, թոքավորների ենթակարգի ցամաք. փափկամարմինների կարգ: Աչքերը շոշափուկների վերին զույգի գագաթին են (այստեղից՝ անվանումը): Հայտնի է մոտ 80 ընտանիք, մոտ 15 հզ. տեսակ: Յ–ի շարքին են դասվում խաղողի խխունջը, լորձնամոլյուսկը ևն:

ՅՈՅ Վիկտոր Ռոբերտովիչ (1962–1990), ռուս. ռոքի կորեացի երգիչ: 1981–ից՝ «Կինո» ռոք խմբի ղեկ.: Հեղինակ է ռոք կոմպոզիցիաների՝ «Մենք սպասում ենք փոփոխությունների» («Ասսա» ֆիլմի համար), «Արեգակ անունով աստղը» ևն: Նկարահանվել է «Ասսա», «Ասեղ» կինոնկարներում: Զոհվել է ավտովթարից:

ՅՈՈՒՆ (Zorn) Անդերս (1860–1920), շվեդ գեղանկարիչ, գրաֆիկ: Գեղանկարչության և օֆորտի տեխնիկայի վարպետ, գյուղ., քաղաք. կյանքի ժանր. պատկերներում («Պար «Իվանի գիշերը»», 1897) և դիմանկարներում («Ինքնադիմանկար», օֆորտ, 1890) նկատելի են լուսավորության հակադիր էֆեկտներ:

ՅՈՐԵՆ (Triticum), դաշտավլուկազգիների (հացազգիներ) ընտանիքի միամյա խոտաբույսերի ցեղ: Հացահատիկ. առաջատար մշակաբույս է: Հայտնի է 30 տեսակ (Եվրասիայում, Աֆրիկայում, Ամերիկայում, Ավստրալիայում), ՀՀ–ում՝ 13՝ վայրի՝ միահատիկ, ուրարտ., արարատյան ևն, մշակովի՝ միահատիկ, կարծր, կունդիկ, սովոր. հաճար Յ–ներ: Շատ տեսակների հայրենիքը Հայաստանն է: Վավիլովի, արարատյան, վայրի միահատիկ և Ուրարտու տեսակները գրանցված են ՀՀ Կարմիր գրքում: Վայրի հացազգի բույսերը պահպանելու համար ստեղծվել է Էրեբունի արգելոցը: Յ–ի ընդարձակ ցանքատարածքներ կան ՌԴ–ում, Ուկրաինայում, Ղազախստանում, Կանադայում, ԱՄՆ–ում, Հնդկաստանում, Չինաստանում ևն:

ՅՈՐՆԱՄԱՐ, լ–գագաթ ՀՀ Գեղարքունիքի մարզի և Ադրբեջանի սահմանագլխին՝ Սևանի լ–ներում՝ Կուտական գյուղից 4,5 *կմ* հս–արլ.: Բարձր.՝ 2907 *մ*:

ՅՈՐՆՈՒԿ, ցորենի խոտ, դաշտավլուկազգիների (հացազգիներ) ընտանիքի միամյա, հազվադեպ՝ երկամյա և բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 300 տեսակ (Եվրասիայի և Աֆրիկայի ներարևադարձ. գոտիներում), ՀՀ–ում՝ 14 (գրեթե բոլոր մարզերում): Որոշ տեսակներ մշակում են որպես կերաբույսեր: Բերքատվությունը՝ 50 *գ/հա*: Յ. աշորայինը մոլախոտ է:

ՅՎԱՅԳ (Zweig) Առնոլդ (1887–1968), գերմանացի գրող, հաս. գործիչ: Գերմանիայի արվ–ների ակադ–ի նախագահ (1950–53): 1933–ից՝ տարագիր: 1948–ին վերադարձել է Բեռլին (ԳԴՀՀ): Հեղինակ է «Գրառումներ Կլոպֆեր ընտանիքի մասին» (1911) վիպակի, «Նովելներ Կլավդիայի մասին» (1912), «Վանդսբեկյան կացին» (հրտ.՝ 1943, իվրիտ., թարգմ.՝ գերմ. ձեռագրից), «Երազանքը թանկ է» (1962) և այլ վեպերի, «Սպիտակամորթ մարդկանց մեծ պատերազմը» վիպաշարի:

Հ. Կլայստի անվ. (1915), ԳԴՀՀ–ի Ազգ. (1950), Լենինյան միջազգ. (1958), մրց–ներ:

ՅՎԱՅԳ Ստեֆան (1881–1942), ավստրիացի գրող: 1941–ից՝ Բրազիլիայում: Հեղինակ է «Առաջին ապրումները» (1911), «Ամոկ» (1922), «Զգացմունքների խռովք» (1927) նովելների ժող–ների, մի շարք դասական–ների կենսագր. վեպերի, Է. Վերհառնի, Ռ. Ռոլանի մասին էսսեների, «Երեկվա աշխարհը» (հրտ.՝ 1946) հուշերի, «Մագելան» (1938), «Սրտի անհամբերություն» (1939) վեպերի: Հայ. հրատարակվել են «Ընտիր նովելներ» (1942), «24 ժամ մի կնոջ կյանքից» (1944), «Մարդկության աստեղային ժամերը» (1974) ժող–ները, «Ամերիգո» (1962) վեպը: Ինքնասպան է եղել:

ՅՎԼԵՏ Միխայիլ Սեմյոնովիչ (1872–1919), բույսերի ռուս. ֆիզիոլոգ և կենսաքիմիկոս: Ծնվել է Իտալիայում, 1896–ից՝ Ռուսաստանում: Ստեղծել է խառնուրդների քրոմատագրաֆ. բաժանման և վերլուծության մեթոդ: Հետազոտել է բույսերի տերևների գունակները, անջատել մաքուր a, b, c քլորոֆիլները:

ՅՎԵՏԱԵՎ Իվան Վլադիմիրովիչ (1847–1913), ռուս. անտիկ մշակույթի պատմության, վիմագրության մասնագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1904): Ա. Ի. և Մ. Ի. *Յվետաևաների* հայրը: Մոսկվայում Գեղեցիկ արվ–ների թանգարանի հիմնադիր և 1–ին տնօրեն (1911–13, այժմ՝ Ա. Ս. Պուշկինի անվ. կերպարվ–ի թանգարան):

ՅՎԵՏԱԵՎԱ Անաստասիա Իվանովնա (1894–1993), ռուս գրող: Ի. Վ. *Յվետաևի* դուստրը, Մ. Ի. *Յվետաևայի* քույրը: Հեղինակ է «Հուշեր» (1971) գրքի, բռնադատվածների կենցաղին վերաբերող «Իմ Սիբիր» (1988) ինքնակենսագր., նաև «Ծուխ, ծուխ և ծուխ» (1916) վիպակների, «Անհասանելիները» (1992) պատմվածքների ժող–ների, «Արքայական մտորումներ: 1914 թ.» (1915) փիլ. էսսեների:

ՅՎԵՏԱԵՎԱ Մարինա Իվանովնա (1892–1941), ռուս բանաստեղծուհի, թարգմանչուհի: Ի. Վ. *Յվետաևի* դուստրը, Ա. Ի. *Յվետաևայի* քույրը: 1922–39–ին՝ վտարանդի (հիմնականում ապրել է Պրահայում, Փարիզում): Հեղինակ է «Իրիկնային ալբոմ» (1910), «Կախարդական լապտեր» (1912) սիմվոլիստ., «Վերստեր» (1921), «Ռուսաստանից հետո. 1922–25» (1928) բանաստեղծությունների ժող–ների, «Խեղկատակը» և այլ քնար. շարքերի, «Փսիքեա» (1923), «Պոեմ Լեռան», «Պոեմ Վախճանի» (երկուսն էլ՝ 1926) պոեմների, «Աննման աղջիկը» (1922) հեքիաթ–պոեմի, «Արիադնա» (1927), «Ֆեդրա» (1928) դրամաների, «Արվեստը խղճի լույսի ներքո» (1932–33), «Իմ Պուշկինը» (1937) էսսեների ժող–ների, «Բանաստեղծություններ Չեխիային» (1938–39) հակաֆաշիստ. թեմայով բանաստեղծությունների շարքի: Աստվածաշնչ. կերպարներով հարուստ «Կարապի բնակատեղի» (1917–20, հրտ.՝ 1990) բանաստեղծությունների ժող–ում պատկերել է ցարական Ռոմանովների արքայատան ողբերգ. վախճանը: 1939–ին վերադարձել է ԽՍՀՄ: Ինքնասպան է եղել: Հայ. հրատարակվել է «Քեզ, հարյուր տարի հետո: Բանաստեղծություններ» (1983) ժող–ը:

ՅՎԵՏԿՈՎ Յուրի Դմիտրևիչ (ծ. 1933), ռուս ֆիզքիմիկոս: ՌԴԱ ակադ. (1997): Աշխ–ները վերաբերում են իոնացնող ճառագայթման և լույսի ազդեցությամբ ընթացող քիմ. ռեակցիաների մեխանիզմների ուսումնասիրմանը, ճառագայթապակտրադիտման եղանակների մշակմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1988):

ՅՎԵՏԿՈՎ Յուրի Վլադիմիրովիչ (ծ. 1929), ռուս ֆիզքիմիկոս և մետաղագործ: ՌԴԱ ակադ. (2006): Աշխ–ները վերաբերում են պլազմային, մետաղագործության եղանակով ստացված կառուցող. նյութերի տեխնոլոգիային:

ԽՍՀՄ ՆԽ (1975), ՌԴԱ Պ. Պ. Անոսովի անվ. (2008), Ե. Կ. Զավոյսկու անվ. միջազգ. (2013) մրց–ներ:

ՅՎԵՏԿՈՎ Վիկտոր Նիկոլաևիչ (1910–1999), ռուս. ֆիզքիմիկոս: ՌԴԱ թղթ. անդամ (1968–ից): Աշխ–ները վերաբերում են հեղուկ բյուրեղներին, պոլիմերների լուծույթներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1952, 1983):

ՅՎԻՆԳԵՐ (Zwinger), պալատ. համալիր (1711–22, ճարտ.՝ Մ. Դ. Պյոպելման) Դրեզդենում: Հատակագծի կանոնավորությունը համադրված է ճարտ. խիստ ձևերի և ուշ բարոկկոյի դեկորի հետ: Ավերվել է 1945–ին, վերականգնվել՝ 1945–62–ին (ճենապակու, անագի թանգարաններ, Դրեզդենի պատկերասրահ ևն):

ՅՐԴՈՒՏԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Գեղամա լ–վահանի հվ–արմ. ճյուղավորությունը ՀՀ Արարատի մարզում: Երկ.՝ 10 *կմ*, առլգն բարձր.՝ 2114 *մ* (Յրդուտ լ.): Կատար. մասը ժայռոտ է, լանջերը՝ զառիթափ՝ կտրտված

բազմաթիվ հովիտներով, տեղ–տեղ՝ սողանքներ ու քարաթափվածքներ: Զրբաժան է Վեդի գետի Ցրդուտ և Սպիտակջուր վտակների միջև: Լանդշաֆտը լ–տափաստանային է, բարձրադիր գոտում՝ լ–մարգագետնային:

ՅՐՄԱՆ ՅՈՒՅԻՉ, այն հեռ–յան հակադարձ մեծությունը, որն անցնելիս լուս. զուգահեռ փունջ կազմող ճառագայթ. հոսքը (միջավայրում ցրման հետևանքով) փոքրանում է 10 կամ e անգամ:

ՅՐՈՆ, Սվյուռ, հայկ. հեթանոս. տոմարի ամիսների 25–րդ օրվա անվանումը:

ՅՐՈՆԲՅԻ ՄՈՒԽՐԱԴ (Պետրոսյան, 1884–1927), ազգ–ազատագր. պայքարի մարտիկ: Մասնակցել է Մշո Սբ Առաքելոց վանքի կռվին (1901), Սասունի ապստամբությանը (1904): ԱՀՊ–ի ժամանակ *Քևռու* կամավոր. գնդում, որպես վաշտի հրամ., մասնակցել է բազմաթիվ մարտերի: 1918–ին եղել է Արամ *Մանուկյանի* թիկնապահը: Փետր. ապստամբության (1921) ժամանակ վիրավորվել է, անցել Պարսկաստան, ապա՝ Հալեպ ու Բեյրութ:

ՅՐՎԱԾ ՍԿԼԵՐՈԶ, նյարդ. համակարգի քրոնիկ. հարաճուն հիվանդություն, որի դեպքում ողնուղեղում և գլխուղեղում առաջանում են նյարդ. հյուսվածքի ախտահարման բազմաթիվ օջախներ: Դրսևորվում է կիսալուծանքներով, շարժումների համաձայնեցման, միզապարկի գործունեության խանգարումներով:

ՅՐՎԱԾ ՏԱՐՐԵՐ, քիմ. տարրեր, որոնց արտադր. նշանակության սեփ. միներալներ կամ հանք. հանածոներ հայտնի չեն: Հանդիպում են գլխավորապես այլ միներալներում և օգտ. հանածոներում՝ խառնուրդների ձևով: Յ. տ. են ռուբիդիումը, կադմիումը, ցեզիումը, սկանդիումը, գալիումը, ինդիումը, թալիումը, գերմանիումը, հաֆնիումը, վանադիումը, սելենը, թելուրը, ռենիումը, երբեմն՝ նաև լանթանոիդները և այլ տարրեր: Յ. տ. (բացառությամբ կադմիումի) դասվում են նաև հազվագյուտ մետաղների շարքը, թեև մի քանիսի (ռուբիդիում, վանադիում, գալիում, սկանդիում) պարունակությունը երկրակեղևում համեմատաբար մեծ է:

ՅՐՏԱԴԻՄԱՑԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ, 0°–ից ցածր ջերմաստիճաններին բույսերի դիմանալու ունակությունը: Նպատակային ընտրասերման, գենային ճարտարագիտ–յան միջոցով ստեղծված են տարբեր մշակաբույսերի համեմատաբար ցրտադիմացկուն սորտեր:

ՅՐՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ, օրգանիզմի հյուսվածքների մնասումը ցածր ջերմաստիճանի ազդեցությամբ: Դրսևորումները պայմանավորված են Յ–յան աստիճանով. այտուցվածություն, կապտություն, մաշկի ցավոտություն, բշտերի առաջացում (լավացումը՝ առանց հետքերի), փափուկ հյուսվածքների և նույնիսկ ոսկրերի մեռուկացում:

ՅՑԱՄԱՋԵՐ, 1. երկար և ուղիղ մազեր, հիմքում՝ բարակ, գագաթում՝ հաստացած. կաթնասուն կենդանիների մաշկածածկույթի (բուրդ, մորթի) վերին շարահարկը: 2. Խոզամազեր, որոշ կենդանիների (օր.՝ խոզերի և գորշուկի) կոշտ, դյուրաթեք մազածածկույթը: Դրանցից պատրաստում են խոզանակներ, վրձիններ:

ՅՈՒԳԱԼՐՈՒ, Սանգարյան, նեղուց Ճապոնիայի Հոնսյու և Հոկայդո կղզիների միջև, Ճապոնա. ծովը կապում է Խաղաղ օվկ–ին: Երկ.՝ շուրջ 96 *կմ*, նվզգն լայն.՝ 18 *կմ*, նվզգն խոր. նավարկուղում՝ 110 *մ*: Գլխ. նվինգստ–ները՝ Հակոդատե և Առմորի: Յ–ի տակով է անցնում աշխարհի ամենաերկար տրանսպորտ. թունելը (շուրջ 53,8 *կմ*):

ՅՈՒԼ (լատ.՝ Taurus), կենդանաշրջանի համաստեղություն երկնքի Հս. կիսագնդում՝ Պերսեոս, Խոյ, Կետ, Էրիդան, Օրիոն, Երկվորյակներ և Կառավար համաստեղությունների միջև: Ամենապայծառ աստղն Ալդերաբանն է: Յ–ի համաստեղության մեջ են Բազումք և Հիադներ բաց աստղակույտերը, նաև ռադիո– և ռենտգեն. ճառագայթման հզոր աղբյուր Խեցգետնաձև միգամածությունը՝ PSR 0531 + 21 բարախիչով:

ՅՈՒԼԱՍԱՐ, լ–գագաթ Շիրակի լ–շղթայում՝ ՀՀ Շիրակի մարզում: Բարձր.՝ 2555 *մ*: Լանջերը զառիթափ են՝ կտրտված հեղեղատներով: Լանդշաֆտը լ–մարգագետնային է:

ՅՈՒԼԵՐ (Bulls), երկսմբակավորների կարգի սնամեջ եղջերավորների ընտանիքի ամենախոշոր որոճող կենդանիները: Մոտ են գոմեշներին: Ունեն խոշոր մարմին, կարճ վիզ և կարճ, ուժեղ ոտքեր: Վայրի տեսակները հանդիպում են Եվրոպայում, Ասիայում և Հս. Ամերիկայում: Ընտանի ցեղերը տարածված են ամենուր: Մսվում են բուս. տարբեր կերերով:

ՅՈՒԿԿԻ (Zucchi) Վիրջինիա (1847–1930), բալետի իտալացի արտիստուհի, մանկավարժ: 1885–92–ին Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնում կատարել է գլխ. դերապարեր Չ. Պունիի «Փարավոնի դուստրը», «Էսմերալդա», Պ. Հերտելի «Ջուր նախազգուշություն», Լ. Մինկուսի «Պախիտա» և այլ բալետներում:

ՅՈՒՆԱՄԻ (ճապոն.), քայքայիչ ուժի վիթխարի ալիք, որն առաջանում է օվկ–ի մակերևույթին՝ ուժեղ ստորջրյա երկրաշարժերի ժամանակ՝ ջրի մակարդակի տեղային փոփոխության հետևանքով: Յ–ների տարածման արագությունը 400–800 *կմ/ժ* է: Ալիքների բարձր–յունն առաջացման տեղում տատանվում է 0,01–5 *մ*, ափին, հատակի թեքությունից և ափի բնույթից կախված, կարող է հասնել 15–30 *մ* և ավելի: Յ–ները կարող են շատ խորը թափանցել ցամաք և մեծ ավերածություններ պատճառել: Դիտվում են հիմնականում Խաղաղ օվկ–ի ափերին:

ՅՈՒՊԻԿԱՉԵՎ ԲՋԻՋՆԵՐ, ցուպիկներ, մարդու և ողնաշարավոր կենդանիների աչքի ցանցաթաղանթի լուսազգայուն բջիջներ, որոնք ապահովում են մթնշաղ. տեսողությունը:

ՅՈՒՍԻՄԱ, կղզեխումբ Կորեական նեղուցում: Պատկանում է Ճապոնիային: Տարածքը՝ շուրջ 700 *կմ*², բն.՝ 34 հզ. (2010): Բարձր.՝ մինչև 649 *մ*:

ՅՈՒՍԻՄԱՅԻ ՀՈՍԱՆՔ, Խաղաղ օվկ–ի տաք հոսանքներից, *Կուրոսիոյի* ճյուղավորումը: Անցնում է Ճապոն. ծովի արլ. մասով՝ հվ–ից հս:


ՅՈՒՍԻՄԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ, 1904–05–ի ռուս–ճապոն. պատերազմի ժամանակ [14–15 (27–28). 05.1905] Կորեական նեղուցում՝ Յուսիմա կղզիների մոտ: Ճապոն. նավատորմը (ծովակալ Խ. Տոգո) ջախջախել է ռուս. Խաղաղօվկիանոսյան 2–րդ նավախումբը (փոխծովակալ Զ. Պ. *Ռոժեստվենսկի*): Յ. ճ–ից հետո Ռուսաստանն ստիպված հաշտության բանակցություններ է սկսել:

ՅՈՒՐՏԱՎ, Գաջենք, Գանձեն, p. *Գուգարք* նինգ–ի Բողնոփոր գվո–ում: Ըստ ավանդության՝ հիմնադրել է *Հայկի* եղբորորդի Քաջը: Արշակունիների թագավորության օրոք եղել է Գուգարաց բդեշխների աթոռանիստը, քրիստոնեության ընդունումից հետո՝ եպիսկոպոսանիստ կենտրոն: Ուխտանեսի (X դ.) վկայությամբ՝ Յ–ում ժամերգությունը կատարվել է միաժամանակ հայ. և վրաց.: Ավերվել է VII դ–ում՝ արաբների արշավանքի ժամանակ: Վերականգնումից (VIII–IX դդ.) հետո վերածվել է գք–ի՝ առաջնությունը զիջելով *Սամշվիլդե* քք–ին:

ՅՈՒՅԱՍԱՐԴ, դիսփլեյ (անգլ.՝ display – ցույց տալ, վերարտադրել), տեղեկույթի ակնադիտ. կամ շոշափ. (հազվադեպ) վերարտադր–յան սարք: Առանձնացնում են էլեկտրոնաճառագայթ. խողովակներով, հեղուկաբյուրեղ. և պլազմ. Յ–եր: Յ–ի վրա պատկերի ձևավորումն ապահովում է համակարգչի տեսաքարտը (տեսաադապտեր): Շոշափ. Յ. (կույրերի համար) հարմարեցված է Բրայլի գրատիպին:

ՅՈՒՅՑՄՈՒՆՔ, կոնկրետ գործով ապացուցման ենթակա հանգամանքների վերաբերյալ հարցաքննվող մեղադրյալի, կասկածյալի, տուժողի և վկայի բանավոր հաղորդումները: Ձևակերպվում է հարցաքննությամբ, ապացուցման միջոց է: Մեղադրյալը Յ. է տալիս առաջադրված մեղադրանքի և գործի հետ առնչվող իրեն հայտնի հանգամանքների, կասկածյալը՝ այն հանգամանքների վերաբերյալ, որոնք հիմք են ծառայել նրան ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց ընտրելու համար:

ՅՈՒՅՑԱՅԻՆ ՖՈՒՆԿՑԻԱ, 1. տես *Ապտիճանային* ֆունկցիա: 2. **Էքսպոնենտային ֆունկցիա** [լատ.՝ exponens (exponentis) – ցույց տվող, ի ցույց դնող], $y = e^x$ ֆունկցիան. երբեմն նշանակվում է expx: Օգտագործվում է մաթ–ի բազմաթիվ կիրառություններում (գրաֆիկը տես նկ.):



ՅՈՒՅՈՒԳԱՄՈՒՐԻ, մարդու սուր վարակիչ հիվանդություն (տենդ, գիտակցության խանգարում, ցան)՝ արտահայտված բնական օջախայնությամբ: Հարուցվում է ռիկետսիաներով: Վարակի աղբյուրը վայրի կրծողներն են և տզերը: Մարդը վարակվում է տզերի խայթոցից:

ՈՒ

ՈՒ, հայ. այբուբենի 34-րդ տառը, փոխարինել է մեսրոպյան այբուբենի ւ վյուն տառին: Ունի *գրչագիր*, *երկաթագիր*, *բոլորգիր*, *շղագիր*, *նոտրգիր* տառատեսակները: Հայ-ի հետնալեզվային շրթնայնացած վերին բարձրացման ձայնավոր հնչյուն (հնչույթ) է: Թվային արժեքը՝ 7000:

ՈՒ ԴԻ (մ. թ. ա. 156–87), Չինաստանի կայսր՝ 140-ից: Նրա օրոք կոնֆուցիականությունը ճանաչվել է պաշտոն. գաղափարախոսություն: Ավելի քան 40 տարի պատերազմել է հարևան ժողդ-ների ու պետությունների դեմ, զզալիորեն ընդարձակել կայսրության սահմանները:

ՈՒ ՆՈՒ (1907–1995), Մյանմայի վարչապետ՝ 1948–56, 1957–58, 1960–62-ին: 1947–1958-ին՝ ժող. ազատության հակաֆաշիստ. լիգայի նախագահ: 1969-ին գլխավորել է հակակառավար. վտարանդիությունը: 1973-ին դարձել է բուդդ. վանական:

ՈՒ ՊՈՈՒՆ ՆՅԱ, Ու Պոն Նյա (Մաուն Պոու Սի, 1807-ի և 1816-ի միջև–մոտ 1867), բիրմացի գրող: Բիրմ. ազգ. դրամայի հիմնադիրներից: Հեղինակ է «Պադումա» (մոտ 1855) և այլ դրամաների, նաև բանաստեղծությունների, արձակ գործերի, փիլ-յանը և բժշկությանը վերաբերող աշխ-ների:

ՈՒ ՏԱՆ (1909–1974), ՄԱԿ-ի գլխ. քարտուղար՝ 1962–71-ին: 1961–62-ին՝ ՄԱԿ-ի գլխ. քարտուղարի պաշտոնակատար: 1957–61-ին՝ Բիրմայի (Մյանմայի) մշտ. ներկայացուցիչը ՄԱԿ-ում: Հեղինակ է Մյանմայի պատմության, Ազգերի լիգայի վերաբերյալ և այլ գրքերի:

ՈՒ ՅԶԻՆՅԶԻ (1701–1754), չին գրող: Չին. գրկ-յան սոցիալ. արձակի և ռեալիստ. երգիծանքի հիմնադիրը: Հեղինակ է «Կոնֆուցիականների ոչ պաշտոնական պատմությունը» (հրտ.՝ 1803) երգիծ. վեպի:

ՈՒԱԳԱԴՈՒԳՈՒ Ouagadougou), Բուրկինա Ֆասոյի մայրաքաղաքը Սև և Սպիտակ Վոլտաների միջագետքում: Բն.՝ 1,4 մլն (2010): Առևտրատրանսպորտ. կենտրոն է: Հիմնադրվել է XV դ-ում:

ՈՒԱՅԶ (Wise) Ռոբերտ (Ռոբերտ Էդլ, 1914–2005), ամերիկացի կինոռեժ., պրոդյուսեր: Առավել հայտնի են «Վեսթսայդյան պատմություն» (1961, մյուզիքլ, պարուսույց Ջ. Ռոբինսոնի հետ), «Երաժշտության հնչյուններ» (1965, երաժշտ. մելոդրամա), «Անդրոմեդայի շտամը» (1970), «Աստղային տրեկ. կինոֆիլմ» (1979, ֆանտաստիկ), «Ամառային փոթորիկ» (2000) ֆիլմերը: «Օսկար» մրց. (1961, 1965):

ՈՒԱՅԹ (White) Էդուարդ (1930–1967), ամերիկացի աստղագնաց: ՌՕՈՒ փոխգնդ.: Թռել է «Ջեմինի-4» տիեզերանավով (1965-ի հունիս): ԱՄՆ տիեզերագնացներից առաջինն է դուրս եկել բաց տիեզերք: Զոհվել է «Ապոլոն» տիեզերանավի փորձարկումների ժամանակ: Ու-ի անունով կոչվում է Լուսնի չերևացող կողմի խառնարաններից մեկը:

ՈՒԱՅԹ Պատրիկ Վիկտոր Մարտինդեյլ (1912–1990), ավստրալիացի գրող: Հեղինակ է «Երջանիկ հովիտ» (1939), «Մարդկանց տոհմածառ» (1955), «Ֆոսս» (1957), «Կենդանիներ հերձողը» (1970), «Ժապավեն տերևներից» (1976), «Թուայնբոռնի խճճված գործը» (1979) հոգեբ. վեպերի, «Ճաքեր ապակու վրա» (1981) հուշագրության: Նորելյան մրց. (1973):

ՈՒԱՅԹՀԵԴ (Whitehead) Ալֆրեդ Նորթ (1861–1947), անգլիացի մաթեմատիկոս, տրամաբան և փիլ.: 1924-ից՝ ԱՄՆ-ում: 1920-ական թթ-ի կեսերին զարգացրել է պլատոնիզմին ազգակից «փիլիսոփայական տիեզերաբանությունը»: Հեղինակ է «Մաթեմատիկայի հիմունքներ» (հ. 1–3, 1910–13, Բ. *Ռասելի* հետ) մաթ. տրամաբյան հիմնարար աշխ-յան:

ՈՒԱՅԹՄԵՆ (Whiteman) Փոլ (1890–1967), ամերիկացի դիրիժոր, ջութակահար: Սիմֆոջազի հիմնադիրներից: Էստրադսիմֆ. նվագախմբի հիմնադիրներից (1919, Սանտա Բարբարա) և ղեկ. (մինչև 1940-ը), որի համար Ջ. *Գերշվինը* գրել է «Բլյուզի ոճով ռապսոդիան» (1924) և դաշնամուրի կոնցերտը (1928): Նկարահանվել է «Ջազի արքան» (1930) ֆիլմում:

ՈՒԱՅԹ-ՄՊԻՐԻՏՍ (< անգլ. white – սպիտակ և spirit – սպիրտ, բենզին), հեղուկ ածխաջրածինների խառնուրդ, $t_{եռ.}$՝165–200°C-ի սահմաններում: Ստանում են նավթի ուղղակի թորմամբ: Լուծիչ է, գլխավորապես՝ լաքաներկ. արդ-յան մեջ:

ՈՒԱՅԼԴ (Wilde) Օսկար Ֆինգալ Օ'Ֆլաերտի Ուիլս (1854–1900), իռլանդացի անգլիագիր գրող: Հեղինակ է «Բանաստեղծություններ» (1881) ժող-ի, «Երջանիկ արքայազնը», «Վարդը և սոխակը», «Նռնաքարե տունը» և այլ քնար. հեքիաթների, «Քենտերվիլյան ուրվականը» (1887) և այլ նովելների, «Լեդի Ուինդերմիրի հովիտը» (1892), «Կին, որն արժանի չէ ուշադրության» (1893), «Իդեալական ամուսինը» (1895, հայ.՝ 1972) սոցիալ-քննադատ. թեմաներով կատակերգությունների, «Պադուայի դքսուհին» (1883), «Սալոմե» (1893, հայ.՝ 1922) և այլ ողբերգությունների, «Դորիան Գրեյի դիմանկարը» (1891, հայ.՝ 1972) վեպի: 1895-ին Ու. դատապարտվել է 2 տարվա բանտարկության՝ անբարոյականության (միասեռականություն) մեղադրանքով: Նրա հոգեկան ընկճվածությունն ու տառապանքն արտացոլվել են «Ռեդինգի բանտի բալլադը» (1897) ինքնակենսագր. պոեմում և «De profundis» («Անդունդից», 1905) նամակ-խոստովանության մեջ: Հայ. հրատարակվել են նաև Ու-ի «Երկեր» (1980), «Հեքիաթներ» (1920) ժող-ները:

ՈՒԱՅԼԴԵՐ (Wilder) Բիլլի (1906–2002), ամերիկացի կինոռեժ., սցենարիստ, պրոդյուսեր: Նկարահանել է «Կրկնակի ապահովագրություն» (1944, թրիլլեր), «Կորցրած ուիքենդ» (1945), ««Սանսեթ» բուլվարը» (1950), «Մեղադրող վկան» (1957), «Ֆեդորա» (1977, բոլորը՝ հոգեբ. դրամա), «Ջազում միայն աղջիկներ են» (1959), «Բնակարան» (1960), «Բարեկամ» (1982, երեքն էլ՝ կատակերգություն) և այլ ֆիլմեր: «Օսկար» մրց. (1946, 1951, 1960):

ՈՒԱՅԼԴԵՐ Թոռնթոն (1897–1975), ամերիկացի գրող: Հեղինակ է «Կաբալա» (1926), «Անդրոսցի կինը» (1930), «Երկինքն իմ նշանակման վայրն է» (1934), «Մարտյան իդոսներ» (1948), «Ութերորդ օրը» (1967), «Թեոֆիլ Նորթ» (1973) վեպերի, «Սուրբ Լյուդովիկոս արքայի կամուրջը» (1927) վիպակի, «Մեր քաղաքը» (1938), «Խնամախոսուհին» (1939) պիեսների: Պուլիցերյան մրց. (1938):

ՈՒԱՅԼԵՐ (Wyler) Ուիլյամ (1902–1981), ամերիկացի կինոռեժ.: 1930-ական թթ-ի ամերիկ. կինոյի նշանավոր ռեժ-ներից: Ճանաչված են «Հռոմեական արձակուրդ» (1953, քնար.), «Բեն-Հուր» (1959, պատմ.), «Ինչպես գողանալ միլիոն» (1966, կատակերգություն), «Ծիծաղելի աղջիկը» (1968, մյուզիքլ), «Լ. Բ. Ջոնսի ազատագրումը» (1970, քր. դրամա) և այլ կինոնկարներ, որոշ ֆիլմերում («Փակուղի», 1937, «Մեր կյանքի լավագույն տարիները», 1946, ևն) քննադատել է ժամանակակից իրականությունը:

«Օսկար» մրց. (1942, 1948, 1959):

ՈՒԱՆԴԵՐ (Wonder) Սթիվի (ծ. 1950), աֆրոամերիկացի կոմպոզիտոր, երգիչ (ի ծնե՝ կույր): Դաս. սոուլի և ռիթմ ընդ բլյուզի վարպետներից: Նրա «Ռու իմ կյանքի արևն ես» (1973), «Սըր Դյուկ» (1976), «Ես զանգահարել էի միայն նրա համար...» (1984) և այլ երգեր առանձնանում են արտահայտիչ մեղեդայնությամբ, կատարող. փայլուն տեխնիկայով: «Գրեմմի» մրց. (25 անգամ):

ՈՒԱՆՏ (Watt) Ջեյմս (1736–1819), անգլիացի գյուտարար: Համապիտանի ջերմ. շարժիչի ստեղծողը: Կառուցել է (1774–84) կրկնակի գործողության գլանով շոգեմեքենա, որի մեջ կիրառել է կենտրոնախույս կարգավորիչ, գլանակոթից զուգահեռագծով ճոճանին փոխանցումը և այլ նորույթներ (արտոնագիր՝ 1874-ին):

Ու–ի մեքենան մեծ դեր է կատարել մեք. արտադր–յան անցման ընթացքում:

ՈՒԱՏՏԱՐԱ (Ouattara) Ալասան Դրաման (ծ. 1942), *Կոտ դ'Իվուարի* նախագահ՝ 2010–ից (փաստացի՝ 2011–ից): 1990–93–ին՝ վարչապետ: 1994–99–ին՝ Միջազգ. արժութ. հիմնադրամի փոխտնօրենն: 1999–ից՝ Կոտ դ'Իվուարի «Հանրապետական–ների միավորում» կուս–յան նախագահ:

ՈՒԲԵՅԴՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ, *Ուբայդ*, հնագիտ. մշակույթ Հվ. Միջագետքում (մ. թ. ա. VI հզ–ամյակի վերջ–IV հզ–ամյակի 1–ին կես): Սկզբն. փուլում (VI հզ–ամյակի վերջ–V հզ–ամյակի կես) եղել է վաղերկրագործ. մշակույթ՝ նկարազարդ խեցեղենով, ծաղկման փուլում (V հզ–ամյակի վերջ–IV հզ–ամյակի 1–ին կես)՝ զարգացած մշակույթ (մեծ բնակավայրեր, տաճարներ, ջրանցքներ, կնիքներ, պղնձե սակավաթիվ իրեր են): Ու. մ–ի հիման վրա ստեղծվել է *Շումերի* քաղաքակրթությունը:

ՈՒԲՈՐԵՎԻՉ (Uborevičius) Իերոնիմ Պետրովիչ (1896–1937), լիտվացի զորապետ, 1–ին կարգի բանակային հրամ. (1935): Ռուսաստանում 1917–22–ի քաղաքաց. պատերազմի ժամանակ եղել է Հվ., Կովկաս. և Հվ–արմ. ռազմաճակատների բանակների հրամ.: 1922–ին՝ Հեռավորարլ. հանրապետության ռազմ. նախարար և Ժող. բանակի գլխ. հրամ.: 1925–ից՝ մի շարք ՋՕ–ների զորքերի հրամ.: Անհիմն բռնաղատվել է, գնդակահարվել, հետագայում՝ արդարացվել:

ՈՒԳԱՆԴԱ (Uganda), **Ուգանդայի Հանրապետություն** (Republic of Uganda), պետություն Արլ. Աֆրիկայում: Սահմանակից է Հվ. Սուդանին, Քենիային, Կոնգոյի ԺՀ–ին, Ռուանդային և Տանզանիային: Տարածքը՝ 241,5 հզ. *կմ²*, բն.՝ 34,7 մլն (2013): Մայրաքաղաքը՝ *Կամպալա*: Պետ. լեզուները՝ սվահիլի, անգլ.: Կառավարման ձևը՝ նախագահահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Բաժանված է 4 մարզի և 112 օկրուգի: Հավատացյալների մեծ մասը քրիստոնյա (կաթոլիկ ու բողոքական) է, կան նաև մահմեդականներ, ավանդ. հավատալիքների հետևորդներ: Անդամակցում է ՄՄԱ–ին, Աֆրիկ. միության, ԱռտՀԿ–ին: Աշխարհի հետամնաց երկիրներից է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 1,3 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է սուրճ, ձուկ, թեյ, ոսկի, բամբակ, ծաղիկներ ևն, ներմուծում նավթամթերք, մեքենաներ և սարքավորումներ, դեղորայք, հագուստ ևն: Դրամ. միավորը՝ ուգանդ. շիլինգ:

Միջին դարերում Ու–ի տարածքում գոյություն են ունեցել Կիտարա, Ունյորորո, Նկորե, Տորո պետությունները: XIX դ–ում ուժեղացել է XIII դ–ում կազմավորված Բուգանդա պետությունը: 1890–ական թթ–ին այս երկրների նկատմամբ հաստատվել է բրիտ. պրոտեկտորատ: 1962–ից անկախ պետություն է, նախկին թագավորությունները ստացել են ինքնավարություն: Պետության գլուխ է դարձել կաբակա (ժառանգ. կառավարիչ) Մուտեսա II–ը: 1967–ին ընդունվել է սահմանադրություն, որով վերացվել է միապետությունը, և ընդունվել է հանրապետ. կառավարման ձևը: Նախագահ է դարձել Մ. Օբոտեն, որն իրականացրել է տնտեսան «աֆրիկանացման» քաղ–յուն: 1971–ի զինվ. հեղաշրջմամբ իշխանությունն անցել է Ի. Ամին Դադային, որը հաստատել է բռնապետություն: Զանգված. բռնաճնշումների են ենթարկվել տարբեր ժողդ–ներ: 1979–ին Տանզանիայի զինուժի օգնությամբ Ամին Դադայի վարչակարգը հեռացվել է: 1980–ի նախագահ. ընտրություններով նախագահ է վերընտրվել Օբոտեն, որը կրկին ռազմ. հեղաշրջմամբ հեռացվել է 1985–ին: Պետ. իշխանության բարձրագույն մարմին է դարձել Ռազմ. խորհուրդը: 1986–ին իշխանության են եկել Դիմադրության ազգ. բանակի ուժերը՝ Յ. Մուսևենիի գլխավորությամբ: Բարձրագույն օրենսդիր մարմին է հռչակվել Դիմադրության ազգ. խորհուրդը: 1994–ին տեղի են ունեցել Սահմանադիր ասամբլեայի ընտրությունները: 1996–ին անցկացվել են նախագահ. ընտրություններ, հաղթել է Մուսևենին (վերընտրվել է 2001, 2006, 2011 և 2016–ին):

ՈՒԳԱՐԻԹ, հնագույն ք–պետություն Փյունիկիայի հս–ում (մ. թ. ա. II հզ–ամյակ):

ՈՒԳԱՐԻԹԱԿԱՆ ԳԻՐ, բաղաձայն. տառահնչյունային սեպաձև գրատեսակ, առաջացել է ասուր. սեպագրից: Կիրառվել է մ. թ. ա. XV–XIV դդ–ում *Ուգարիթում*:

ՈՒԳԱՐԻԹԵՐԵՆ, Ուգարիթի բնակչության լեզուն: Պատկանում է աֆրո–ասիական լեզվաընտանիքի սեմ. ճյուղին: Հնագույն գրավոր հուշարձաններն ավանդվել են մ. թ. ա. II հզ–ամյակից:

ՈՒԳԵԴԵՅ, *Հոքաթա* (1186–1241), մոնղոլ մեծ խան՝ 1229–ից: *Չինգիս խանի* 3–րդ որդին և հաջորդը: Ու–ի օրոք ավարտվել է Հս. Չինաստանի գրավումը, նվաճվել են Հայաստանը, Վրաստանը, Հս. Ատրպատականը, Բաթու խանն արշավել է Արլ. և Կենտր. Եվրոպա:

ՈՒԳՐԱ–ՖԻՆՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, ուրալյան լեզվաընտանիքի ճյուղ: Ունակ Ու–ֆ. լ. դիտում են որպես առանձին լեզվաընտանիք: Բաժանվում է մերձբալթա–ֆինն. (ֆինն., իժորերեն, կարելերեն, լյուդիկերեն, վեպսերեն, վոդերեն, էստ., լիվերեն), սաամական, մորդվական (էրզյաներեն և մոկշերեն) կամ վոլգա–ֆինն., մարիական, պերմական (կոմի–զիրյաներեն, կոմի–պերմերեն, ուդմուրտերեն), ուգրական (հունգ., մանսիերեն, խանտիերեն) լեզվախմբերի:

ՈՒԴ (արաբ. – փայտ), լար. կսմիթ. երաժշտ. գործիք: Հնուց տարածվել է Մերձ. Արևելքում, Միջին Ասիայում, Հայաստանում: Իրանն ուռուցիկ ձվաձև է, սոսնձված է կոր փայտաշերտերից, ծածկի վրա ձևավոր ձայնանցքեր են: Հայկ. Ու. 6–լարանի է, լարվածքը՝ կվարտա–սեկունդային:

ՈՒԴԱԼՅՈՎԱ, Զինաիդա Վլադիմիրովնա (1918–1987), ռուս պատմաբան: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1976): Աշխ–ները վերաբերում են Բյուզանդիայի պատմությանը:

ԽՍՀՄ (1987), ՌԴ (1996, երկուսն էլ՝ հետմահու) Պետ. մրց–ներ:

ՈՒԴԵՆՈՒՅՆ (Oudenrijn) Մարկ Անտուան վան դեն (1890–1962), հոլանդացի հայագետ, արևելագետ, փիլ., աստվածաբան: ՎԱնտՄՄ անդամ: Հռոմի դոմինիկյան ճեմարանի ուսուցիչ (1920): Հեղինակ է մոտ 430 աշխ–յան (200–ը՝ հայագիտ.), նաև հայ միաբարների և ՎԱնտՄՄ պատմության ու միաբանների գործունեության մասին մենագրությունների: Հայ–ից անգլ. է թարգմանել «Յաղագս Առաքինութեանց հոգւոյն» (1942) երկը:

ՈՒԴԻՆԵՐ (ինքնանվանումը՝ ուդի), ժողդ Հս. Ադրբեջանում (3,8 հզ.), ՌԴ–ում (4,2 հզ.), ՀՀ–ում (շուրջ 200), Վրաստանում և այլուր: Ընդհ. թիվը՝ շուրջ 10 հզ. (2010): Լեզուն՝ ուդեերեն: Հավատացյալները քրիստոնյա (եվտիքեսական և ուղղափառ) են: Ադրբեջանի Վարդե և Կուտկաշեն գ–երում ապրել են հայախոս Ու.:

ՈՒԴՄՈՒՐՏԻԱ, Ուդմուրտական Հանրապետություն (1991–ից), ՌԴ Մերձվոլգյան դաշն. օկրուգում: Տարածքը՝ 42,1 հզ. *կմ²*, բն.՝ 1,53 մլն (2009): Ունի 25 շրջան, 6 քաղաք, 5 քտա: Կազմավորվել է 1920–ին՝ որպես Վոտյան ԻՄ, 1932–ից՝ Ուդմուրտ. ԻՄ, 1934–ից՝ Ուդմուրտ. ԻԽՍՀ:

ՈՒԴՄՈՒՐՏՆԵՐ (ինքնանվանումը՝ ուդմուրտ), ժողդ ՌԴ–ում, Ուդմուրտիայի արմատ. բնակչությունը (460,6 հզ.): Ընդհ. թիվը ՌԴ–ում՝ շուրջ 552 հզ. (2010): Լեզուն՝ ուդմուրտերեն: Հավատացյալներն ուղղափառ քրիստոնյա են:

ՈՒԴՈՒՄՅԱՆ Կամո Բաբիի (1927–2012), կուս–պետ. աշխատող, դիվանագետ: Պատմ. գիտ. դ–ր (1975): ՀԽՍՀ մշակույթի (1967–72), ԱԳ (1972–75) նախարար: ԽՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան Նեպալում (1975–79), Լյուքսեմբուրգում (1979–87): Աշխատել է Մշակույթի խորհրդ. ֆոնդում:

ԽՍՀՄ «Պատվո նշան», Հոկտ. հեղ–յան, Ժողդ–ների բարեկամության շքանշաններ:

ՈՒԵԲՍՏԵՐ, **Վեբստեր** (Webster), Ջոն (1580–1625/34), անգլիացի դրամատուրգ: Հեղինակ է «Սպիտակ սատանան» (1609–13, բեմ.՝ 1612), «Դքսուհի Ամալֆի» (1612–14, բեմ.՝ 1623) և այլ ողբերգությունների, համահեղ.՝ կատակերգությունների:

ՈՒԵԴ, Ակինարի (1734–1809), ճապոնացի գրող: Հեղինակ է «Լուսինը մշուշի մեջ» (1768), «Պատմվածքներ գարնանային անձրևի մասին» (1809) պատմվածքների ժող–ների:

ՈՒԵԴԵԼԻ ԾՈՎ, (Weddell Sea), Ատլանտ. օվկ–ի ծայրամաս. ծով Արմ. Անտարկտիդայի ափերի մոտ՝ Անտարկտիկ. թ–կղզուց արմ.: Մակերեսը՝ 2910 հզ. *կմ²*, խոր.՝ մինչև 6820 *մ*: Ափերին կան ձանձաղուտ. սառցաշաշտեր, հանդիպում են սառցասարեր: Կան կետեր, փոկեր: Հայտնագործել է անգլիացի ծովագնաց Ջ. Ուեդելի (1787–1834) արշավախումբը 1823–ին:

ՈՒԵԼԲԵԿ (Houellebecq) Միշել (ծ. 1958), ֆրանսիացի գրող: Հեղինակ է «Տարրական մասնիկներ» (1998), «Հարթակ» (2001), «Կղզու հնարավորությունը» (2005), «Հասարակության թշնամիները» (2008), «Քարտեզ և տարածք» (2010), «Խոնարհություն» (2015) և այլ վեպերի, նաև էսսեների, բանաստեղծությունների ժող–ների ու հոդվածների: Դուբլինի գր. (2002), Գոնկուրյան (2010) մրց–ներ:

ՈՒԵԼԹԻ (Welty) Յուդորա (1909–2001), ամերիկացի գրող, քննադատ, լուսանկարիչ: Հեղինակ է «Կանաչ վարագույր» (1941), «Պատմվածքների ժողովածու» (1980) ժող–ների, «Տանուլ տալով ճակատամարտերը» (1970), «Լավատեսի աղջիկը» (1972) վեպերի, «Գյուղական գերեզմանատներ» (2000) լուսանկարչ. ալբոմի:

ՈՒԵԼԼԵՐ (Weller) Թոմաս Հաբլ (1915–2008), ամերիկացի բժիշկ և վիրուսաբան: Մշակել է (Ֆ. *Ռոբինսի* և Ջ. *Էնդերսի* հետ) հյուսվածք. կուլտուրաների վրա պոլիոմիելիտի վիրուսի աճեցման մեթոդ, որով նպաստել է այդ հիվանդության արդյունավետ կանխարգելման վակցինայի ստացմանը: Նոբելյան մրց. (1954, Ֆ. Ռոբինսի և Ջ. Էնդերսի հետ):

ՈՒԵԼՍ (Wells) Հերբերտ Ջորջ (1866–1946), անգլիացի գրող: Գիտաֆանտաստիկ գրկ-յան հիմնադիրը: Հեղինակ է «Ժամանակի մեքենան» (1895), «Անտեսանելի մարդը» (1897), «Աշխարհների պատերազմը» (1898) գիտաֆանտաստիկ վեպերի, «Մարդիկ որպես աստվածներ» (1923) վեպ-ուտոպիայի, «Երբ քնածը կարթնանա» (1899), «Գիսաստղի օրերին» (1906), «Ռուսաստանը մշուշի մեջ» (1920, հայ.՝ 1960), «Նախօրեին» (1927) և այլ վեպերի, «Ուիլյամ Կլիսոլդի աշխարհը» (1926) վեպ-աշխ-յան, «Պատմության ակնարկ» (1920), «Պատմության համառոտ ակնարկ» (1922), «Լեզալ դավադրություն» (1928) աշխ-ների: Հայ. հրատարակվել են «Կայրերի երկիրը» (1923), «Անտառի գանձը» (1962) պատմվածքների ժող-ները, «Անտեսանելի մարդը: Պատերազմ օդում» (1959) վեպը:

ՈՒԵԼՍ (Welles) Օրսոն (1915–1985), ամերիկացի կինոռեժ., դերասան: Նկարահանել է «Քաղաքացի Քեյնը» (1941), «Հրաշալի Էմբերսոնները» (1942), «Մակբեթ» (1948), «Օթելլո» (1952), «Դատավարություն» (1962), «Ֆալստաֆ» (1966) և այլ ֆիլմեր, որոնց բնորոշ են համարձակ որոնումները դրամատուրգիայում և կինոլեզվում, այլաբան. ձևերի ընդհանրացումը: «Օսկար» մրց. (1941, 1970):

ՈՒԵԼՍ (Wales), Մեծ Բրիտանիայի վարչաքաղ. մասերից: Զբաղեցնում է համանուն թ–կղզին և մոտակա Անգլսի կղզին: Տարածքը՝ 20,8 հզ. *կմ*², բն.՝ 3 մլն (2011): Գլխ. ք–ը՝ Քարդիֆ: Հնում բնակեցված է եղել կելտ. կիմրեր ցեղերով: XIII դ–ում Ու. նվաճել է Անգլիան (մինչև 1536–ը՝ ինքնավար իշխանություն): 1301–ից Անգլիայում գահի ժառանգորդները կրում են «Ուելսի արքայազն» տիտղոսը:

ՈՒԵԼՍՑԻՆԵՐ, **վալլիացիներ**, ժողտ Մեծ Բրիտանիայում (3,6 մլն, 2001), Ուելսի հիմն. բնակչությունը (3 մլն): Ապրում են նաև ԱՄՆ–ում (0,9 մլն, 2000), Կանադայում (27,1 հզ., 2006): Լեզուն՝ վալլիերեն: Հավատացյալները հիմնականում անգլիկան եկեղեցու հետևորդ են:

ՈՒԵՍՏ (West) Բենջամին (1738–1820), ամերիկացի գեղանկարիչ: Հանդիսավոր դիմանկարներում և պատմ. թեմաներով նկարներում («Ու. Պեննի պայմանագիրը հնդկացիների հետ», 1772) նկատելի է հետաքրքրությունը հրատապ իրադարձությունների, զգեստների և կահավորանքի հանդեպ: 1763–ից՝ Լոնդոնում, 1792–ից՝ Թագավոր. գեղարվ–ի ակադ–ի նախագահ:

ՈՒՋԲԵԿ Սուլթան Մուհամմեդ (մոտ 1283–1342), *Ոսկե Հորդայի* խան՝ 1313–41–ին: 1313/14–ին մահմեդականությունն ընդունել է որպես Ոսկե Հորդայի պետ. կրոն: Դադարեցրել է միջցեղ. պառակտումները, ամրապնդել պետությունը: 1319 և 1335–ին արշավել է Առան՝ Հուլավյանների դեմ: Ձգտել է առավելագույնս թուլացնել ռուս իշխաններին: Նրա հրամանով մահապատժի են ենթարկվել մի քանի իշխաններ՝ իրենց որդիների հետ: Իվան Կալիտայի աջակցությամբ ճնշել է Տվերի աստամբությունը (1327): 1328–ին Վլադիմիրի մեծ իշխանությունը բաժանել է 2 մասի, 1340–ին նրանից անջատել Նիժնի Նովգորոդն ու Գորոդեցը:

«ՈՒՋԲԵԿԱԿԱՆ ՄՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ», ուզբ. առաջին համապարփակ հանրագիտարանը (հ. 1–14, 1971–80): Հանրագիտարանի հիմքի վրա լույս է ընծայվել «Ուզբեկական ԽՍՀ» միհատորյակ (ռուս.՝ 1981, ուզբ.՝ 1988):

ՈՒՋԲԵԿԵՐԵՆ, *ուզբեկների* լեզուն, *Ուզբեկստանի* պետ. լեզուն: Պատկանում է թյուրք. լեզվաընտանիքի հվ–արլ. (միջինասիական կամ կառլուկյան) խմբին: Գրի հիմքում արաբ. (մինչև 1927–ը), լատ. (1927–40), ռուս. (1940–ից) այբուբենն է:

ՈՒՋԲԵԿՆԵՐ (ինքնանվանումը՝ ուզբեկ), թյուրք. ժողտ, Ուզբեկստանի հիմն. բնակչությունը (25 մլն, 2014): Ապրում են նաև Աֆղանստանում (1,8 մլն), Տաջիկստանում (1,6 մլն), Ղրղըզստանում (665 հզ., 1999), Թուրքմենստանում (շուրջ 500 հզ.), Ղազախստանում (448 հզ., 2009), ՌԴ–ում (289,8 հզ., 2010), Չինաստանում (12,4 հզ.) և այլ երկրներում (ընդհ. թիվը՝ շուրջ 30 մլն, 2014): Լեզուն՝ ուզբ.: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են:

ՈՒՋԲԵԿՍՏԱՆ, **Ուզբեկստանի Հանրապետություն**, պետություն Կենտր. Ասիայում: Սահմանակից է Ղազախստանին, Ղրղըզստանին, Տաջիկստանին, Աֆղանստանին և Թուրքմենստանին: Տարածքը՝ 447,4 հզ. *կմ*², բն.՝ 31,8 մլն (2016): Մայրաքաղաքը՝ *Տաշքենդ*: Պետ. լեզուն՝ ուզբ.: Կառավարման ձևը՝ նախագահական հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը: Կազմված է 13 վարչ. մարզերից և Կարակալպակստանի Հանրապետությունից: Հավատացյալների մեծ մասը սուննի մահմեդական է: Չեզոք երկիր է, անդամակցում է ՄԱԿ–ին: Ունի անցում. տնտ–յուն: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 6,8 հզ. ԱՄՆ դոլար է (2016): Արտահանում է բամբակ, ոսկի, ուրանի հանքանյութ, բնական գազ, ավտոմեքենաներ, մետաղներ ևն, ներմուծում նավթամթերք, մեքենաներ և սարքավորումներ, սննդամթերք, մետաղներ ևն: Դրամ. միավորը՝ սում:

Մ. թ. ա. VIII դ–ից Ու–ի տարածքում գոյություն են ունեցել հնագույն պետություններ Բակտրիան, Խորեզմը, Սողդիանան: Մ. թ. ա. VI դ–ում Ու–ի տարածքը եղել է Աքեմենյանների տիրապետության տակ, IV դ–ում այն նվաճել է Ալեքսանդր Մակեդոնացին, մոտ 250–ին մտել է Հունա–բակտրիական, մ. թ. ա. մոտ I դ–ի վերջից մինչև մ. թ. IV դ–ի կեսը՝ Քուշան. թագավորությունների մեջ: V դ–ի կեսից մինչև VI դ–ի 60–ական թթ. եղել է հեփթաղների տիրապետության տակ, որի անկումից հետո՝ VI դ–ում կազմավորվել է Թյուրք. խաքանությունը: VIII դ–ի կեսին Ու–ի տարածքը գրավել են արաբները, բռնի տարածել մահմեդականություն: IX դ–ում Միջին Ասիայում կազմավորվել է Սամանյանների պետությունը, որի առավել զարգացած մարզերից էր Ու.: X դ–ի վերջից մինչև XIII դ–ի սկիզբն Ու–ի գրեթե ողջ տարածքը պատկանել է Կարախանյանների պետությանը, արմ. մասը՝ Խորեզմին: XIV դ–ի 2–րդ կեսին XV դ–ի վերջին այն եղել է Թիմուրյանների պետության կազմում: XVI դ–ի սկզբին ձևավորվել է Շայբանյանների ուզբ. պետությունը, XVI դ–ում՝ Բուխարայի և Խիվայի, XVIII դ–ում՝ Կոկանդի խանությունները: XIX դ–ի 60–70–ական թթ–ին ռուս. զորքերը գրավել են Ու–ի ամբողջ տարածքը, 1867–ին կազմավորվել է Թուրքեստանի գեն. նահանգապետությունը, 1873–ին ավարտվել է նաև Խիվայի և Բուխարայի խանությունների նվաճումը: 1917–ի նոյեմբ–ից 1918–ի մարտը երկրամասում հաստատվել է խորհրդ. իշխանություն, և Ու. Թուրքեստանի ԻԽՍՀ կազմում մտել է ՌԽՖՍՀ կազմի մեջ: 1924–ին կազմավորվել է Ուզբ. ԽՍՀ, 1925–91–ին եղել է ԽՍՀՄ՝ կազմում՝ որպես միութ. հանրապետություն: 1991–ին, ԽՍՀՄ փլուզումից հետո, հռչակվել է անկախ պետություն: 1991–2016–ին երկրի նախագահը Ի. *Քարիմովն* էր, որի մահից հետո՝նախագահի պաշտոնակատար է նշանակվել Շ. Մ. *Միրզիյոևը*:

Հայերն Ու. են եկել Այսրկովկասից (հիմնականում՝ Ղարաբաղից, Ջանգեզուրից), Ռուսաստանից, Պարսկաստանից: 1920–ական թթ–ին Ու–ի համայնքը դարձել է ամենախոշորը Միջին Ասիայում: Հայերը կառուցել են եկեղեցիներ Սամարղանդում (Սբ Աստվածածին, 1903), Կոկանդում (1910), Անդիժանում, Բուխարայում: Եկեղեցիներին կից գործել են ծխ. դպրոցներ: Սակայն ԽՍՀՄ տարիներին բոլոր եկեղեցիներն ու դպրոցները փակվել են: Ու–ի անկախության հռչակումից հետո հիմնվել են Տաշքենդի հայ մշակույթի կենտրոնը, Սամարղանդի «Լույս» մշակութ. ընկ–ը: Հայերին վերադարձվել է Սամարղանդի Սբ Աստվածածին եկեղեցու պահպանված շինքը, որը հիմնովին նորոգվել է և վերաօծվել 1995–ին: Ներկայում Ու–ում բնակվում է շուրջ 75 հզ. հայ:

ՈՒՋՈՒՆԴԱՐԱՆ, հայկ. հարսանեկան, կանանց հնագույն մենապար: Տարածված է առավելապես Արցախում: Կազմված է ոտ փոխելու, օձաձև և 2 գնալ՝ 2 դառնալու, թեթև թռիչքներով քայլերից: Շարժումները դանդաղ են, հանդիսավոր: Պարեղանակը մեկն է, չափը՝ 6/8:

ՈՒՋՈՒՆՅԱՆ Էլվիրա Գրիգորի (ծ. 1934), երգչուհի (քնարակոլորատուր. սոպրանո): ՀՀ (1978), ՎԽՍՀ (1985) ժող. արտիստ: 1962–91–ին՝ ԵՕԹԹ–ի մեներգչուհի (Անուշ՝ Ա. Տիգրանյանի «Անուշ», Օլիմպիա՝ Տ. Չուխաճյանի «Արշակ Բ», Մարո՝ Ջ. Փալիաշվիլու «Դահիճ», Մարֆա՝ Ն. Ա. Ռիմսկի–Կորսակովի «Թագավորի հարսնացուն», ևն): Նկարահանվել է կինոյում («Սպիտակ ափեր», 1975, «Եվս 5 օր», 1978, երկուսն էլ՝ Հայֆիլմ, ևն): 1992–ից՝ ԱՄՆ–ում: Բոստոնում ստեղծել և ղեկավարում է «Օգնենք երիտասարդ տաղանդներին» կազմ–յունը: Այսրկովկաս. մրցույթի դափնեկիր (1965, Թբիլիսի):

ՈՒՋՈՒՐՊԱՑՈՒՄ (լատ.՝ usurpatio – զավթել, գրավել), որևէ բանի ապօրինի զավթում կամ ուրիշի իրավունքների բռնի յուրացում:

«ՈՒԹ ՄԱՆՐԱՆԿԱԲԻԶՆԵՐԻ ԱՎԵՏԱՐԱՆ», Կիլիկիայի արքուն. ընտիր ձեռագրերից (Մոնդ., ձեռ. № 7651, գրիչ՝ Ավետիս): Պատկերազարդվել է XIII դ–ի վերջին քառորդին (նկարիչները հայտնի չեն, 1320–ին լրացրել է Սարգիս Պիծակը): Ունի 230 սյուժետ. մանրանկարներ և 4 շքեղ տիտղոսաթերթեր, որոնք պատկերազարդել են 6–8 մանրանկարիչներ: Ձեռագիրն աչքի է ընկնում հայկ. և բյուզ. արվ–ում մշակված տեքստ. մանրանկարների գրեթե բոլոր տիպերով:

ՈՒԹԱՆԻՍ, **օկտաէդր** (< հուն. októ – ութ և hédra – նիստ), 5 տեսակի կանոնավոր բազմանիստերից մեկը: Ունի 8 եռանկյուն նիստ, 12 կող, 6 գագաթ:

ՈՒԹՋԱՅՆ, ավանդ. ձայնեղանականների համակարգ միջնադար. քրիստ. երաժշտարվում: Պայմանավորված է Հին աշխարհի մի շարք ժողտ–ների, նաև հայերի մեջ հնուց

ձևավորված ձայնեղանակների մասին ուսմունքով, որը մինչև IV դ–ի սկիզբը քրիստ. պաշտամունք. երաժշտության մեջ վերաձևավորվել է Ու–ի՝ միավորելով 8–ից ավելի ձայնեղանակներ: Համակարգը կիրառվել է IV դ–ից: Ձայնեղանակները վերակարգավորել են Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Ա Պարթևը: Համակարգերի խմբագրման, կանոնացման և այլ ինդիրներով զբաղվել են նաև Բարսեղ Շմոնը, Ստեփանոս Սյունեցին, Ներսես Շնորհալին, Գրիգոր Տաթևացին և ուր.:

ՈՒԹՇԱՒՈՒԱԾԹԱՆԻ ԲՈՒՏԵՐ, բուստ. պոլիպների ենթադաս: Գաղութները տարատեսակ ձևեր, չափեր և գույներ ունեն: Կազմված են փետրաձև, 8 ճառագայթավոր պոլիպներից (երկ՝ 1 *սմ*–ից պակաս): Հայտնի է 4 կարգ՝ գորգոնարիաներ, ծով. փետուրներ, արևային բուստեր և փափուկ բուստեր կամ ալցիոնարիաներ: Որոշ Ու. բ. (օր.՝ ազնիվ բուստը) օգտագործում են արդյունագործության մեջ:

ՈՒԹՄԱՋՅԱՆ Արթուր Հայկարամի (ծ. 1948), դերասան: ՀՀ ժող. արտիստ (2003): Հայկարամ *Ութմաջյանի* և Հրաչուհի *Ջինանյանի* որդին: 1968–ից՝ ԵԴԹ դերասան (Մանչուկ՝ Ա. Ե. Մակայոնոկի «Հալածված առաքյալը», Բրուտոս, Տիբալտ՝ Վ. Շեքսպիրի «Հուլիոս Կեսար», «Ռոմեո և Ջուլիետ», Հիսուս՝ Պ. Զեյթունցյանի «Հիսուս Նազովրեցին և նրա երկրորդ աշակերտը», Բանաստեղծ՝ «Անվերջ վերադարձ», ըստ Պ. Սևակի, ևն): Հանդես է գալիս նաև ասմունքով: Համամիութ. թատեր. փառատոնի 1–ին (1973, Մոսկվա), ՀՀ Պետ. (2011), ՀԳԹՄ «Արտավազդ» (2000) մրց–ներ:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (1998):

ՈՒԹՄԱՋՅԱՆ Հայկարամ Մուրադի (1912–1970), պատմաբան, կուս–պետ. աշխատող: Պատմ. գիտ. դ–ր (1966), պրոֆ. (1967): Հրաչուհի *Ջինանյանի* ամուսինը, Արթուր *Ութմաջյանի* հայրը: Աշխ–ները վերաբերում են Հայաստանի միջնադար. պատմությանը («Սյունիքը IX–X դարերում», 1958) և ժամանակի գաղափարաբանության հարցերին:

ՈՒԹՈՏՆՈՒԿՆԵՐ (Octopoda), գլխոտանիների դասի ծով. փափկամարմինների կարգ: Գլխին ունեն 8 երկար շոշափուկներ՝ «ձեռքեր» (նախկինում կոչում էին «ոտքեր»): Մարմնի երկ.՝ 1–60 *սմ*, «ձեռքերի» հետ՝ մինչև 5 *մ*: Հայտնի է մոտ 200 տեսակ: Հատակ., հազվադեպ՝ ջրի հաստության մեջ ապրող (պելագիալ) կենդանիներ են: Ու. աչքի են ընկնում լավ հիշողությամբ և վարժվելու ունակությամբ: Արդյունագործ. կենդանի է: Կան մարդու համար վտանգավոր թունավոր տեսակներ:

ՈՒԹՍՈՆ (Utzon) Յոռն (1918–2008), դանիացի ճարտ.: Կառույցներն առանձնանում են քանդակի օրգ. ձևերով (Սիդնեյի օպեր. թատրոն, 1957–73), ավանդ. ճարտ. մոտիվների վերամշակմամբ (ԱԺ–ի շենքը Էլ–Քուվեյթում, 1985), բնության և քաղաքաշինության կապի կարևորումով (բնակելի զանգված Ֆրեդենսբուրգում, 1962–63):

«ՈՒԹՍՈՒՆԱԿԱՆՆԵՐ», արևմտահայ գրողների, քննադատների, հրապարակախոսների շարժում 1880–90–ական թթ–ին, որի նպատակն արևմտահայ գրկ–յան մեջ ռեալիզմի սկզբունքների հաստատումն էր: Շարժման սկիզբը սովորաբար համարվում է *«Արևելք»* թերթի հիմնադրման տարին: «Ու.»–ի գործունեության ամենաբեղմնավոր շրջանը *«Հայրենիք»* թերթի հրտ–յան տարիներն էին: Պարբ–ի շուրջը համախմբվել է գր. երիտասարդ սերունդը (Լ. Բաշալյան, Տ. Կամսարական, Մ. Կյուրճյան, Թլկատինցի, Գ. Զոհրապ, Ա. Չոպանյան և ուր.), որի գաղ. առաջնորդը, տեսաբանն ու կազմակերպիչը Արփիար *Արփիարյանն* էր:


ՈՒԹՈՒՀՅԱՆ Էդուարդ Մկրտչի (1905–1975), ճարտ.: Փարիզում հիմնադրել է Ստորգետնյա քաղաքաշինության ընկ–ը (1933, 1937–ից՝ միջազգ.): Նրա նախագծերով Փարիզում և այլ ք–ներում կառուցվել է շուրջ 250 շինություն, վերականգնվել Երուսաղեմի Սբ Հակոբ եկեղեցին և այլ հուշարձաններ: Հեղինակ է «Հայաստանի IV–XVII դդ. հուշարձանները» (ֆրանս., 1967) գրքի: Համաշխ. ցուցահանդեսի Մեծ. մրց. (1937, Փարիզ), Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» շքանշան:

ՈՒԹՈՒՀՅԱՆ (Յությունյան) Կարապետ Սիմոնի (1823–1904), հրտ., խմբ., մանկավարժ, թարգմանիչ: 1852–54–ին՝ Կ. Պոլսի «*Մասիս*» պարբ–ի, 1862–66–ին՝ «Մանրալուրք «Մասիս» լրագրոյ» («Մասիս»–ի հավելված), 1876–77–ին՝ հայատառ թուրք. «Բուզմամեի Մասիս», 1877–ին, միաժամանակ՝ «*Ապագա*» օրաթերթի արտոնատեր: Թարգմանել է (ֆրանս–ից) Է. Սյուի, Ժ. Վեռնի և ուր. գործերից:


ՈՒԹՈՒՀՅԱՆ Հայկ Արիսի (ծ. 1966), դիրիժոր: 1988–92–ին՝ Սասեքսի (Անգլիա) կամեր. նվագախմբի գլխ. դիրիժոր, 1992–1995–ին՝ Դյուպարկ անսամբլի գեղ. ղեկ., 1991–95–ին՝ Բեթհովենս. ընկ–յան սիմֆ. նվագախմբի և երգչախմբի տնօրեն: 1999–ից՝ Չեխիայում: 2000–ից՝ Լաբեմի Ուստի ք–ի օպեր. թատրոնի դիրիժոր, Հս. Բոհեմիայի կամեր. նվագախմբի գլխ. դիրիժոր, Քերուանի երգչախմբի գլխ. խմբավար ևն: Միջազգ. մրցույթների («Բոր Հարդինգ» երիտասարդ դիրիժորների և այլ մրց–ներ) դափնեկիր:

ՈՒԺ մեխանիկայում, նյութ. մարմնի վրա այլ մարմինների մեխ. ազդեցության չափը, որն առաջացնում է մարմնի կետերի արագությունների փոփոխություն կամ մարմնի դեֆորմացիա, և կարող է տեղի ունենալ ինչպես անմիջական հպման (միմյանց սեղմված մարմինների ճնշում), այնպես էլ փոխազդող մարմինների ստեղծած դաշտերի (ծանրության դաշտ, *էլեկտրամագնիսական դաշտ*) միջոցով: Ու. վեկտոր. մեծություն է և ժամանակի տվյալ պահին բնութագրվում է թվային արժեքով, ուղղությամբ ու կիրառման կետով:

ՈՒԺԱԳԾԵՐ էլեկտրական և մագնիսական դաշտերի, գծեր, որոնց տարած շոշափողները դաշտի յուրաքանչյուր կետում ուղղությամբ համընկնում են, համապատասխանաբար, էլ. կամ մագնիս. դաշտերի լարվածությունների հետ: Որակապես բնութագրում են էլեկտրամագնիս. դաշտի բաշխումը տարածության մեջ: Ու. ուժ. դաշտի պատկերման ակնառու եղանակ են (նկ. 1, նկ. 2):



Մագնիսական դաշտի ուժագծերը գլանային սոլենոիդում. N–ը և S–ը հյուսիսային և հարավային մագնիսական բևեռներն են



Նույնանուն լիցքավորված 2 հաղորդիչ գնդերի էլեկտրաստատիկ դաշտերի ուժագծերը (1–ին լիցքը մեծ է 2–րդ լիցքից)

ՈՒԺԱՋՈՒՅԳ, մեծությամբ հավասար, ուղղությամբ հակառակ 2 զուգահեռ ուժեր, որոնք կիրառված են նույն մարմնի վրա: Ու. կազմող ուժերի ազդման գծերի միջև ամենակարճ հեռ–յունը կոչվում է Ու–ի բազուկ: Ու–ի ազդեցությունը մարմնի վրա բնութագրվում է Ու–ի մոմենտով՝ ուժերից մեկի և բազուկի արտադրյալով:

ՈՒԺԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ, մեխանիզմ, որը մեխ. էներգիան շարժիչից փոխանցում է սպառողներին՝ արագության (պտտման հաճախության) փոքրացման հաշվին մեծացնելով ուժերը (պտտման մոմենտները): Ու. փ. երբեմն ծառայում է շարժման բնույթը փոխելու համար:

ՈՒԺԱՉԱՓ, դինամոմետր (< հուն. dýnamis – ուժ և ...*չափ*), ուժի կամ պտտող մոմենտի չափման սարք: Բաղկացած է ուժ. օղակից (առաձգ. տարր) և հաշվանք. սարքավորումից: Ըստ գործողության սկզբունքի՝ լինում են մեխ. (զսպանակ. կամ լծակ.), հիդրավլիկ. և էլ., ըստ նշանակման՝ նմուշ. և աշխ. (ընդհ. նշանակման և հատուկ):


ՈՒԺԳՆՈՒՄՅՈՒՆ ՁԱՅՆԻ, լսող. զգացողության մեծություն, որը կախված է ձայնի ինտենսիվությունից և հաճախությունից: Անփոփոխ հաճախության դեպքում Ու. ձ. աճում է ինտենսիվության աճման հետ: Նույն ինտենսիվությունների դեպքում առավել ուժգնությամբ օժտված են 700–1000 *Հց* հաճախությունների ընդգրկույթի ձայները: Ու. ձ–ի զրոյական մակարդակը համապատասխանում է 20 *մկՊա* ձայնի ճնշմանը և 10^{-12} ձայնի ուժին՝ 1 *կՀց* հաճախության դեպքում:


ՈՒԺԵՂ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ, տարր. մասնիկների հիմնարար փոխազդեցություն, որի բնութագր. փոխազդեցության հաստատունը շատ ավելի մեծ է, քան մյուս տիպի փոխազդեցություններինը: Ու. փ–ներում մասնակցում են *հադրոնները*: Ու. փ. էլեկտրամագնիս. փոխազդեցությունը գերազանցում է մոտ 100 անգամ, նրա գործողության շառավիղը մոտ 10^{-15} *մ* է:

Ու. փ–յան մասնավոր դեպքեր են միջուկ. ուժերը: Ու. փ–յան ժամանակակից տեսությունը *քվանտային քրոմոդինամիկան* է:

ՈՒԺԵՂԱՐԱՔ (տեխ.), սարք, որտեղ ազդանշանի էներգ. հարաչափերի ուժեղացումը կատարվում է օժանդակ աղբյուրի էներգիայի հաշվին: Ուժեղացվող ազդանշանների ֆիզ. բնույթին համապատասխան՝ տարբերում են մեխ., օդաճնշ. ջր. և էլ. Ու–ներ: Դրանք ավտոմատիկայի, հեռուստամեխանիկայի, ռադիոտեխնիկայի սարքերի հիմն. տարրերից են:

ՈՒԺԵՐԻ ԳՈՒՄԱՐՈՒՄ, տրված ուժերի համակարգի երկրչփ. գումարի (այսպես կոչված՝ գլխ. վեկտորի) որոշումն *ուժերի զուգահեռագծի* կանոնի կամ ուժերի բազմանկյան կառուցման եղանակով (նկ. ա, նկ. բ): Մեկ կետում կիրառված ուժերի համար Ու. գ–ման դեպքում որոշվում է նրանց համազորը:





Ուժերի գումարում. ա. F_1, F_2, F_3, ..., F_n ուժերը՝ կիրառված մարմնի վրա, բ. ուժերի գումարումը բազմանկյան կանոնով, abcd...n–ը ուժային բազմանկյուն է, R–ը՝ համազոր ուժը:

ՈՒԺԵՐԻ ԶՈՒԳԱՀԵՌԱԳԻԾ, ուժերի գումարման օրենքն արտահայտող երկրչփ. կառուցում՝ մարմնի միևնույն կետում կիրառված 2 ուժերի համազորի մեծությունն ու ուղղությունը որոշելու համար: Համազորն ուղղված է տրված ուժերի վրա կառուցված զուգահեռագծի անկյունագծով և թվապես հավասար է այդ անկյունագծի երկ–յանը:

ՈՒԺՎԻ Նատալյա Միխայլովնա (1898–1986), ուկրաինացի դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1944): Սոց. աշխ. հերոս (1973): 1936–ից՝ Ի. Ֆրանկոյի անվ. ուկր. թատրոնի դերասանուհի (Աննա՝ Ի. Ֆրանկոյի «Գողացված երջանկություն», Ֆիլումենա՝ Է. դե Ֆիլիպպոյի «Ֆիլումենա Մարտուրանո», ևն): Նկարահանվել է կինոյում («Վիբորգյան կողմ», «Ծիածան» ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1949, 1951):

ՈՒԻԹԻԵՐ (Whittier) Ջոն Գրինլիֆ (1807–1892), ամերիկացի բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս (սևամորթ ստրուկների ազատագրության շարժման մասնակից): Հեղինակ է «Ազատության ձայներ» (1846), «Բանաստեղծություններ» (1849), «Աշխատանքի երգեր» (1850) ժող–ների, «Ձյան մեջ կորածները» (1866) պոեմի:

ՈՒԻԹԼ (Whittle) Ֆրենկ (1907–1996), անգլիացի ճարտարագետ, ավիացիոն շարժիչների կոնստրուկտոր: Աշխատել է որպես փորձարկող օդաչու: 1930–ին, աշխարհում առաջինը, ստացել է ավիացիոն տուրբոռեակտիվ շարժիչի հայտնագործման արտոնագիր: Նրա մշակած կառուցվածքի շարժիչներով ինքնաթիռներ արտադրվել են Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ–ում:

Անգլիայի Արժանյաց ասպետ (1948):

ՈՒԻԹՄԵՆ (Whitman) Ուոլթ (1819–1892), ամերիկացի բանաստեղծ, հրապարակախոս: Հեղինակ է «Խոտի տերևներ» (1855, հայ.՝ 2012), «Թմբկահարություն» (1865), «Երբ այս գարնանը բակում՝ տան առջև, ծաղկում էր եղրևանին» (1865) ժող–ների: Ու–ի որոշ բանաստեղծությունները թարգմանվել են հայ. (հատկանշական են Ե. Չարենցի թարգմ–յունները՝ «Մեր Օրերը», «Եվրոպա»): Հայ. հրատարակվել է նաև «Բանաստեղծությունների գիրք» (2012) ժող–ը:

ՈՒԻԹՆԻ (Whitney) Էլի (1765–1825), ամերիկացի գյուտարար և արդյունաբերող: Ստեղծել է առաջին բամբակազտիչ մեքենան (1793), ֆրեզեր. հաստոցը և մի շարք մետաղահատ գործիքներ:

ՈՒԻԹՍԹՈՆ, Վիթսթոն (Wheatstone), Չառլզ (1802–1875), անգլիացի էլեկտրատեխնիկ: Ստեղծել է (1858) հեռագր. սարք, որը հետագայում անվանել են նրա անունով: Հայտնաբերել է (1867) էլ. մեքենաների ինքնագրգռման սկզբունքը: Առաջարկել է (1844) էլ. չափումների կամրջային մեթոդը, հայտնագործել մի շարք սարքեր:

ՈՒԻԼԼԻՍ (Willis) Բրյուս (ծ. 1955), ամերիկացի կինոդերասան, պրոդյուսեր, երաժիշտ: Առավել ճանաչվել է ոստիկան Ջոն Մաքլեյնի դերով «Ամուր կաղին» 1–4 հեռուստասերիալում: Նկարահանվել է նաև «Բրեական ընթերցվածք», «12 կապիկ», «Շնագայլը», «Հինգերորդ տարրը», «Արմագեդոն», «Մեղքերի քաղաքը», «Բարի գալուստ դրախտ» և այլ ֆիլմերում:

ՈՒԻԼԿԻՆՍ (Wilkins) Հուբերտ (1888–1958), ամերիկացի բևեռախույզ, օդաչու: 1913–1939–ին մասնակցել է մի շարք արկտիկ. և անտարկտիկ. գիտարշավների (այդ թվում՝ Հ. Սվերդրուպի «Նաուտիլուս» սուզանավով, 1931): Օդանավով թռել է Կենտր. Արկտիկայի, Արմ. Անտարկտիդայի վրայով, մասնակցել Կենտր. Արկտիկայում Ս. Ա. Լևանևսկու որոնումներին (1937–38):

ՈՒԻԼԿԻՆՍ Մորիս (1916–2004), անգլիացի մոլ. կենսաբան և ֆիզիկոս: Առաջինն է ստացել ԴՆԹ–ի մոլ–ի բարձրորակ ռենտգենագիրը, որով նպաստել է նրա կառուցվածքի (կրկնակի պարույրի) հաստատմանը: Նոբելյան մրց. (1962, Ֆ. *Քրիկի* և Ջ. *Ուոթսոնի* հետ):

ՈՒԻԼԿԻՆՍՈՆ (Wilkinson) Ջեֆրի (1921–1996), անգլիացի քիմիկոս–օրգանիկ, անցումային տարրերի մետաղօրգ. քիմիայի հիմնադիրներից: Լոնդոնյան թագավոր. ընկ–յան անդամ (1965): Հաստատել է (1952) ֆեռոցենի քիմ. կառուցվածքը («սենդվիչային»): Բացահայտել է էթիլեն. և ացետիլեն. ածխաջրածինների հիդրման լավագույն կատալիզորը՝ $[(C_6H_5)_3P]_3RhCl$, որը կոչվում է Ու–ի անունով: Նոբելյան մրց. (1973, Է. *Ֆիշերի* հետ):

ՈՒԻԼԿՍ (Wilkes) Չառլզ (1798–1877), Օվկիանիայի և Անտարկտիկայի ամերիկացի հետազոտող: 1838–42–ին ղեկավարել է Խաղաղ օվկ–ի հվ. մասը և Անտարկտիկան ուսումնասիրող արշավախումբը, հայտնագործել է Արլ. Անտարկտիդայի ափամերձ հատվածը (Ուիլկսի Երկիր):

ՈՒԻԼՅԱՄՍ (Williams) Թենեսի (Թոմաս Լանիր, 1911–1983), ամերիկացի դրամատուրգ: Հեղինակ է «Ապակե գազանանոցը» (1945), ««Ցանկություն» տրամվայը» (1947, բեմադրվում է դրամատիկ. թատրոնում), «Օրփեոսը իջնում է դժոխք» (1955), «Իգուանի գիշերը» (1961), «Հրեշային երկիր» (1970) պիեսների, «Ութ օրինավոր մոլագար կանայք» (1974) պատմվածքների ժող–ների:

ՈՒԻԼՅԱՄՍ Ուիլյամ Կառլոս (1883–1963), ամերիկացի բանաստեղծ: Ազատ բանաստեղծության վարպետ (հետևել է Ու. Ուիթմենին): Հեղինակ է «Բանաստեղծությունների ընտրանի» (1934), «Անապատի երաժշտությունը» (1954), «Կերպարներ Բրեյզելից» (1962) բանաստեղծությունների, «Ագարակատիրոջ աղջիկները» (1961) պատմվածքների ժող–ների, «Սպիտակ ջորին» (1937) և այլ վեպերի, ինքնակենսագր. (1951) երկի: Պուլիցերյան մրց. (1962):

ՈՒԻԼՅԱՄՍՈՆ (Williamson) Օլիվեր (ծ. 1932), ամերիկացի տնտեսագետ: Աշխ–ները վերաբերում են կապիտալիզմի տնտ. ինստ–ների, ձեռնարկատիր. ընտրության կազմակերպ. ձևի արդյունքների հետազոտման խնդիրներին:

Նոբելյան մրց. (2009, Է. *Օսթրոմի* հետ):

ՈՒԻԼՍՈՆ (Wilson) Էդուարդ Օսբոռն (ծ. 1929), ամերիկացի կենդանաբան, էկոլոգ: Սոցիոկենսբ–յան հիմնադիրը: ԱՄՆ ԳԱԱ ակադ. (1969): Վերլուծելով բնական և հումանիտար գիտ–յունների տվյալները՝ փորձել է բացահայտել և ուսումնասիրել կենդանիներին ու մարդկանց բնորոշ հաս. վարքի որոշ ձևերի կենսբ. հիմունքները: Պուլիցերյան (1979, 1991), Կրաֆորդի (1990) և այլ մրց–ներ:

ՈՒԻՄԲԼԴՈՆԻ ՄՐՑԱՇԱՐ, թենիսի ամենամյա միջազգ. մրցաշար Ուիմբլդոնում (Լոնդոն): Աշխարհի ոչ պաշտոն. առաջնությունն է խոտածածկ կորտերում: Անցկացվում է 1877–ից՝ որպես Մեծ Բրիտանիայի թենիսի բաց առաջնություն:

ՈՒԻՓԼ (Whipple) Ջորջ Հոյթ (1878–1976), ամերիկացի բժիշկ և ախտաբան: Պեռնիցիոզ սակավարյունության բուժման՝ այսպես կոչված լյարդային մեթոդի հեղինակներից: Նոբելյան մրց. (1934, Ջ. *Մայնոտի* և Ու. *Մերֆիի* հետ):

ՈՒԼԱԳ Մուհամմեդ (ծ. թ. անհտ–1445), *Ոսկե Հորդայի* խան՝ 1419–23 և 1426–37–ին, Հորդայի արմ. մասի խան՝ 1923–26–ին: Ղազախ խաների 1–ին հարստության հիմնադիրը: *Թողթամիշի* թոռը: Ձախջախել է մոսկովյան զորքը Բելովի ճակատամարտում (1437), իսկ նրա որդիները՝ Սուզդալի մարտում (1445): Հարձակումներ է կատարել Մոսկվայի (1439), Մուրոմո–Ռյազանյան հողերի (1444–45) վրա: 1438–ին իր հորդայով վերաբնակվել է Միջին Պովոլժիեում, նպաստել այնտեղ Կազանի խանության ձևավորմանը:

ՈՒԼԱԳԱՅ Սերգեյ Գեորգևիչ (1875/77–1946), *Սպիտակ շարժման* զորապետ Հվ. Ռուսաստանում քաղաքաց. պատերազմի տարիներին (1917–22)՝ գեն–լեյտ. (1919): Մասնակցել է Ռուս–ճապոն. պատերազմին (1904–05) և ԱՀՊ–ին: 1920–ին Կուբանում ղեկավարել է գեն. Պ. Ն. *Վրանգելի* ռուս. բանակի դեսանտ. զորամասերը, Ղրիմում պարտությունից հետո տարագրվել է, ապրել Սարսելում, կազմակերպել կազակների կրկես. խումբ:

ՈՒԼԱՆ ԲԱՏՈՐ, **Ուլանբաատար,** Մոնղոլիայի մայրաքաղաքը Տոլա գետի ափին: Ինքնուրույն վտհ է: Տարածքը՝ 4,7 հզ. *կմ*²: Բն.՝ 1,1 մլն (2010): Տրանսպորտ. հանգույց է, ունի օդանավակայան: Հիմնադրվել է 1639–ին Օրգոո (Ստավկա) անունով:

ՈՒԼԱՆ ՈՒԴԵ, ք. ՌԴ–ում, Բուրյաթիայի վարչ. կենտրոնն Ուդա և Սելենգա գետերի միախառնման վայրում: Բն.՝ 358 հզ. (2009): Երկթղ. հանգույց է: Հիմնադրվել է 1666–ին:

ՈՒԼԱՆՈՎԱ Գալինա Սերգեևնա (1909/10–1998), բալետի ռուս. արտիստուհի, մանկավարժ: ԽՍՀՄ ժող. արտիստ (1951): Սոց. աշխ. հերոս (1974, 1980): 1928–44–ին՝ Լենինգրադի ՕԲԹ–ի, 1944–60–ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մենապարուհի (Օդետա–Օդիլիա՝ Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճը», Ժիզել՝ Ա. Ադանի «Ժիզել», Ջուլիետ՝ Ս. Ս. Պրոկոֆևի «Ռոմեո և Ջուլիետ», ևն): ԽՍՀՄ Պետ. (1941, 1946, 1947, 1950), Լենինյան (1957) մրց–ներ:

ՈՒԼԲՐԻԽՏ (Ulbricht) Վալտեր (1893–1973), գերմանացի պետ–քաղ. գործիչ, ԳՄՄԿ ԿԿ գլխ. քարտուղար՝ 1950–53–ին, 1–ին քարտուղար՝ 1953–71–ին: ԳՄՄԿ պատվ. նախագահ (1971–ից): ԳԴԵՀՀ Պետ. խորհրդի նախագահ (1960–ից):

ՈՒԼԵՆԲԵԿ (Uhlenbeck) Ջորջ Յուջին (1900–1988), ամերիկացի ֆիզիկոս (ծագումով՝ հոլանդացի): Աշխ–ները վերաբերում են քվանտ. մեխանիկային, միջուկ. ֆիզիկային, սպեկտրագրությանը, վիճակագր. ֆիզիկային: Ներմուծել է (1925, Ս. Գաուդսմիթի հետ) *սպին* հասկացությունը:

ՈՒԼԻՆ, Օլին (Ohlin), Բերտիլ Գոթհարդ (1899–1979), շվեդ տնտեսագետ և քաղ. գործիչ: Շվեդիայի ժող. կուս–յան նախագահ (1944–67): Աշխ–ները վերաբերում են գների, փոխատվ. կապիտալի ու տոկոսի, միջազգ. առևտրի խնդիրներին: Նոբելյան մրց. (1977, Ջ. *Միդի* հետ):

ՈՒԼՄԱՆ (Ullmann) Լիվ (ծ. 1938), նորվեգացի դերասանուհի: Համաշխ. ճանաչման է արժանացել Ի. *Բերգմանի* ֆիլմերով («Ան-

ձնավորություն», «Գայլի ժամը», «Ամոթ», «Կիրք», «Շշուկներ և ճիչ», «Տեսարաններ ամուսնական կյանքից», «Երես առ երես», «Աշնանային սոնատ», «Մարաբանդա»): Նկարահանվել է նաև «Վտարանդիներ», «Նորաբնակներ», «Գիշերային այցելուն», «Սեր» և այլ կինոնկարներում, նկարահանել «Սոֆի» (1992) ֆիլմը:

ՈՒԼՄԱՆԻՍ (Ulmanis) Գունտիս (ծ. 1939), Լատվիայի նախագահ՝ 1993–99-ին: Կ. *Ուլմանիսի* թոռը: 1941–48-ին ծնողների հետ աքսորվել է Կրասնոդարի երկրամաս: 1992-ից՝ Լատվիայի բանկի խորհրդի անդամ:

ՈՒԼՄԱՆԻՍ Կառլիս (1877–1942), լատիշ քաղ. գործիչ: Գ. *Ուլմանիսի* պապը: Լատվիայի վարչապետ, այնուհետև նախագահ՝ 1936–40-ին: Լատվիայի գյուղաց. միության առաջնորդ: 1918–34-ին մի քանի անգամ ղեկավարել է Լատվիայի կառ-յունը, 1934-ին կատարել է պետ. հեղաշրջում: 1940-ի հունիսին արտաքսվել է Ստավրոպոլ, 1941-ին՝ ձերբակալվել: 1942-ին տեղափոխվել է Կրասնովոդսկ, որտեղ մահացել է:

ՈՒԼՅԱՆՈՎ Միխայիլ Ալեքսանդրովիչ (1927–2007), ռուս. դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1969): Սոց. աշխ. հերոս (1986): 1950-ից՝ Մոսկվայի Ե. Վախթանգովի անվ. թատրոնի դերասան (Ռոզդժին՝ «Ապուշը» ըստ Ֆ. Մ. Դոստոևսկու, Սերգեյ՝ Ա. Ն. Արբուզովի «Իրկուտսկյան պատմություն», Վիկտոր՝ Է. Գ. Ձորինի «Վարշավյան մեղեդի», Ռիչարդ III՝ Վ. Շեքսպիրի «Ռիչարդ III», Շմագա՝ Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», ևն), 1987-ից՝ գեղ. ղեկ.: Նկարահանվել է «Նախագահը», «Կարամազով եղբայրներ», «Վազք», «Թեմա», «Անձնական կյանք» և այլ ֆիլմերում:

Լենինյան (1966), ՌԽՖՍՀ (1975), ԽՍՀՄ (1983) Պետ. մրց-ներ:

ՈՒԼՅԱՆՈՎ Նիկոլայ Պավլովիչ (1875–1949), ռուս. գեղանկարիչ, գրաֆիկ: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1932): ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի անդամ (1949): Հեղինակ է հոգեբ. դիմանկարների («Կ. Ս. Ստանիսլավսկին աշխատանքի ժամանակ», 1947), պատմ. թեմաներով նկարների («Պուշկինը կյանքում», 1930-ական թթ., շարք, ևն), թատեր. ձևավորումների (Մ. Ա. Բուլգակովի «Տուրբինների օրերը», 1926, ՄԳԱԹ): ԽՍՀՄ Պետ. մրց. (1948):

ՈՒԼՅԱՆՈՎՍԿ (մինչև 1924-ը՝ Սիմբիրսկ), ք. ՌԴ-ում, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 615,0 հզ. (2012): Երկթեղ. հանգույց է: Հիմնադրվել է 1648-ին որպես ամրոց: Կոչվել է Վ. Ի. Ուլյանովի (*Լենին*) պատվին:

ՈՒԼՅԱՆՈՎՍԿԻ ՄԱՐԶ, վտմ ՌԴ Մերձվոլգյան դաշն. օկրուգում: Տարածքը՝ 37,2 հզ. *կմ*², բն.՝ 1,253 մլն (2017): Ունի 21 շրջան, 6 քաղաք և 30 քտա: Վարչ. կենտրոնը՝ *Ուլյանովսկ*: Կազմավորվել է 1943-ի հունվ. 19-ին: Գլխ. գետը՝ *Վոլգա*:

ՈՒԼՈՏՐԻՔՍ (Ulothrix), կանաչ ջրիմուռների դաս: Հայտնի է մոտ 25 տեսակ (ծովերում և քաղցրահամ ջրամբարներում), ՀՀ-ում՝ 2. որոշ տեսակներ մշակում և օգտագործում են սննդի մեջ:

ՈՒԼՄԱՆ, ք-ավինգստո Կորեայի Հանրապետության Կենսան Նամդո պրովինցիայում՝ Ճապոն. ծովի ափին: Բն.՝ 1,12 մլն (2013): Երկրի խոշորագույն արդ. կենտրոններից է. կան մեքենաշին. (ավտոմեքենաշին., նավաշին. ևն), նավթաքիմ., թեթև, սննդի արդ-յան և այլ ձեռն-ներ:

ՈՒԼՏԻՄԱՏՈՒՄ (լատ.՝ ultimus – ամենավերջին), տես *Վերջնագիր*:

ՈՒԼՏՐԱ... (լատ.՝ ultra – անդրա..., գեր..., սահմանանց), բարդ բառերի մաս. նշանակում է «սահմանի այն կողմում գտնվող» (քանակ. կամ որակ. հայտանիշներով), օր.՝ ուլտրաձայն:

ՈՒԼՏՐԱՄԱՐԻՆ, կանաչից մինչև մանուշակագույն (առավել հայտնի է կապույտը) գունանյութ: Ստացվում է սոդայի և ծծմբի (կամ Na_2SO_4-ի և ածխի) հետ կաոլինի միահալումով: Կիրառվում է ներկեր պատրաստելու, ռետինը ներկելու, սննդամթերքը, սպիտակեղենը, թուղթը կապտեցնելու համար:

ՈՒԼՈՒԲԵՅԱՆ Բագրատ Արշակի (1925–2001), գրող, պատմաբան, խմբ.: Պատմ. գիտ. դ-ր (1973): 1949–67-ին՝ ԼՂԻՄ ԳՄ մարզ. բաժանմունքի քարտուղար, միաժամանակ՝ «Սովետական Ղարաբաղ» (այժմ՝ *«Ազատ Արցախ»*) թերթի խմբ.: Հեղինակ է «Երգեր աշխատանքի և խաղաղության» (1952), «Այս առավոտ» (1956) բանաստեղծությունների, «Այգեստան» (1960), «Հատիկը չի մահանում» (1967) և այլ պատմվածքների ու վիպակների ժող-ների, «Հայրենի հող» (1959), «Սարդարապատ» (1991) վեպերի, «Խաչենի իշխանությունը 10–16 դդ-ում» (1975), «Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության. 5–7-րդ դդ.» (1981), «Արցախի պատմությունը. Սկզբից մինչև մեր օրերը» (1994), «Արցախյան գոյապայքարի տարեգրություն» (1997), «Ժամանակի քննությունը» (2006) և այլ աշխ-ների:

ՈՒԼՈՒՀՈՃՅԱՆ Գաբրիելա Լևոնի (ծ. 1934), լեզվաբան, հայագետ: ՀՀ ԳԱԱ պատվ. դ-ր (1996): Հեղինակ է «Հայոց պատմության նյութերը Կենտրոնական Եվրոպայի արխիվներում» (անգլ., 2001) աշխ-յան: Հրատարակել է «Բարսեղ Կեսարացու «Գիրք հարցողաց»»-ի (1994) քնն. բնագիրը, Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի «Աշխարհագրութիւն» (2000) երկը, պատմաբանասիր. հոդվածներ:

ՈՒԼՈՒՆԵՔ, զարդի տեսակ՝ մանր, գնդաձև, բազմանիստ, ձվաձև, խողովակաձև: Պատրաստում են բրոնզից, պղնձից, ոսկորից, ագաթից, մարջանից և այլ նյութերից: Հայաստանում (Լճաշեն, Հառիճ ևն) պեղումներով հայտնաբերվել են Ու-ներ՝ ագաթից և սարդիոնից (մ. թ. ա. II հզ-ամյակի սկիզբ):

ՈՒԽՏ, 1. հավատքի ձև, դաշինք՝ Աստծու և մարդու միջև, բաղձանքի իրականացման նպատակով կրոն. երդում (օր.՝ այցելություն սրբատեղի, նվիրաբերություն ևն), որով հավատացյալը դիմում է Աստծուն կամ սրբերին: Ու-ից հրաժարումը համարվել է ծանր մեղք և Աստծու պատժին արժանի արարք: Ու. լինում է ոչ միայն անձև., այլև հաս. (օր.՝ ուխտագնացության տոներ): 2. Կրոն. միաբանություն:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ, հայկ. ժող. երաժշտության մեջ՝ նույնանուն ծեսին վերաբերող երգերի ամբողջություն: Ուխտատեղիների՝ նկարագրության և գովքի երգերն ընդգրկված են վիպ. ժանրում: Ու. ե-ի եղանակները հայտնաբերել է *Կոմիտասը*: Կան նաև ուխտագնացության պարեր (օր.՝ Կոմիտասի գրառած ու մշակած հանդիսավոր «Մշո Շորորը»):

ՈՒԽՏԱՆԵՍ, Ուխտանես եպիսկոպոս (մոտ 935–1000), պատմագիր, եկեղեց., հաս. գործիչ: Պայքարել է *քաղկեդոնականության* դեմ: Հեղինակ է 3 բաժնից բաղկացած (վերջինը մեզ չի հասել) «Պատմութիւն Հայոց» (980–982, հրտ.՝ 1871) երկի: Մ. *Բրոսսեն* այն թարգմանել է ֆրանս. (1870–71):

ՈՒԽՏՈՄՍԿԻ Ալեքսեյ Ալեքսեևիչ (1875–1942), ռուս. ֆիզիոլոգ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1935): Հետազոտել է դրդման, արգելակման շարժընթացները և շարժունության մեխանիզմները: Ստեղծել է դոմինանտի, օրգանների՝ արտաքին գրգիռների ռիթմի յուրացման մասին ուսմունք: Վ. Ի. Լենինի անվ. մրց. (1932):

ՈՒԿՐԱԻՆԱ, պետություն Արլ. Եվրոպայում: Սահմանակից է Լեհաստանին, Բելառուսին, ՌԴ-ին, Ռումինիային, Մոլդովային, Հունգարիային և Սլովակիային: Տարածքը՝ 577,62 հզ. *կմ*², բն.՝ 4,5 մլն (2016): Մայրաքաղաքը՝ *Կիև*: Պետ. լեզուն՝ ուկր.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը (Գերագույն ռադա): Կազմված է 24 վարչ. մարզերից (Ղրիմի ԻՀ-ն 2014-ին հանրաքվեով միացել է ՌԴ-ին) և 2 հատուկ կարգավիճակով քաղաքներից (Կիև, Սևաստոպոլ): Հավատացյալների մեծ մասն ուղղափառ քրիստոնյա է: Անդամակցում է ՄԱԿ-ին, ԱՊՀ-ին, ԵԱՀԿ-ին, ԵԽ-ին ևն: Անցուս. տնտ-յամբ երկիր է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 8,2 հզ. ԱՄՆ դոլար է (2016): Արտահանում է մետաղներ, նավթամթերք, քիմիկատներ, մեքենաներ և սարքավորումներ, քիմիկատներ, սննդամթերք ևն, ներմուծում բնական գազ, տրանսպորտ. մեքենաներ, սարքավորումներ, սննդամթերք ևն: Դրամ. միավորը՝ գրիվնա:

Մ. թ. ա. I հզ-ամյակում Ու-ի տարածքում գոյություն են ունեցել Բոսփորի և Սկյութ. թագավորությունները, Հս. Մերձսևծով. անտիկ ք-պետություններ: Մ. թ. IX–XII դդ-ում երկրի տարածքի մեծ մասը մտել է Հին Ռուսիա սրբազան պետության կազմի մեջ: 988–989 թթ-ին քրիստոնեությունը (ուղղափառ) ընդունվել է որպես պետ. կրոն: XII դ-ում Հվ-արմ. Ռուսիայի տարածքում առանձնացել են Կիևյան, Չեռնիգովյան, Գալիցիայի, Վլադիմիր-Վոլինյան և այլ ինքնուրույն իշխանություններ: XIII դ-ում դրանք ենթարկվել են մոնղ. արշավանքներին, XIV դ-ում եղել է Լիտվ. մեծ իշխանության, Լեհաստանի և այլոց տիրապետության տակ: XV դ-ում առաջացել է Ղրիմի խանությունը, XVI դ-ում ուկր. կազակները Դնեպրի ստորին հոսանքում հիմնել են *Զապորոժյան Սեչը*: Բոգդան Խմելնիցկու գլխավորած ազատագր. պատերազմի (1648–54) արդյունքում Ու. միավորվել է Ռուսաստանին: XVIII դ-ի 2-րդ կեսին հարավուկր. հողերն ազատագրվել են թուրք. լծից: ԱՀՊ-ի և 1917–22-ի քաղաքաց. պատերազմի տարիներին Ու. գրավել են գերմ. և ավստր. զորքերը: 1917–20-ին Ու-ի տարածքում կազմավորվել են Ու-ի ժող. Հանրապետություն, Արմ-ուկր. ժող. Հանրապետություն և Ուկր. կայսրություն: 1917-ի դեկտ-ին կազմավորվել է Ուկր. ԽՍՀ-ն: Խորհրդա-լեհ. պատերազմի հետևանքով 1920-ին Արմ. Ու. անցել է Լեհաստանին: 1922-ին Ուկր. ԽՍՀ մտել է ԽՍՀՄ կազմի մեջ՝ որպես միութ. հանրապետություն: 1939-ի նոյեմբ-ին ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև ազդեցության ոլորտների բաժանման արդյունքում Արմ. Ու-ի տարածքը միացվել է Ուկր. ԽՍՀ-ին: ՀՄՊ-ի 1-ին տարիներին

(1941–43) Ու. գրավել են գերմանացինե-րը, որն ազատագրվել է 1944-ի հոկտ-ին, Անդրկարպատ. Ու. նույնպես միացվել է Ուկր. ԽՍՀ-ին: 1954-ին ՌԽՖՍՀ-ի կազմից Ուկր. ԽՍՀ-ին է հանձնվել Ղրիմի մարզը: 1991-ին հռչակվել է անկախ պետություն: 2010-ի նախագահ. ընտրություններում հաղթել է Վ. Ա. Յանուկովիչը, սակայն 2014-ին, երկրում սկսված ռուսամետ և եվրոպամետ ուժերի առճակատման պայ-մաններում, Յանուկովիչը պաշտոնանկ է արվել և հեռացել երկրից: 2014-ին նախա-գահ է ընտրվել Պ. Ա. ***Պորոշենկոն***: Երկիրն ընդունել է Եվրոպայի հետ մերձեցման քաղ. կուրս: 2014-ին հանրաքվեով Ու-ից առանձնացել և ՌԴ-ին են միացել Ղրիմի ԻՀ-ն և Սևաստոպոլ ք-ը: Երկրի հվ-արև-ում բռնկվել է քաղաքաց. պատերազմ, ստեղծվել են Դոնեցկի և Լուգանսկի ինք-նահռչակ հանրապետությունները, որոնք պայքարում են անկախության համար:

Դեռևս XI դ-ում Ու-ի մայրաքաղաք Կիևում ապրել են հայեր: Հայերի գաղ-թը Ու. ուժեղացել է XII դ-ի 2-րդ կեսից՝ պայմանավորված սելջուկ-թուրքերի գերիշխանության տակ հայտնված Հա-յաստանի ծանր վիճակով: Ու-ում հայերի ամենախոշոր գաղութը Լվովն էր: XII դ-ի վերջին այստեղ կար հայկ. եկեղեցի, XIV դ-ի վերջին կազմավորվել է եպիս-կոպոսություն. գործել են Սբ Հակոբ և Սբ Խաչ եկեղեցիները: XIV դ-ում հայկ. գաղթավայրեր են ձևավորվել Մոգիլյով-Պոդոլսկում, Մնյատինում, Ձեռնովցիում, Յազլովեցում (Յաբլոնովկա), Խոտինում, Ստանիսլավում (այժմ՝ Իվանո-Ֆրան-կովսկ), Լուցկում, Վլադիմիրում (XIV դ-ի 2-րդ կեսին վերջին 2 քաղաքներում հայոց կաթողիկոսների կոնդակներով ստեղծվել են հայկ. կրոն. համայնքներ), Բարում, Տիսմենիցայում, Գալիչում, Ստուդենի-ցայում, Լիսեցում, Ժվանեցում (Զվանչա), Դուբրովիցայում և այլուր: Հայերն ունե-ցել են ներքին ինքնավարություն՝ իրենց վարչ. մարմիններով, հայկ. դատարաններ, կազմակերպել են համքարություններ: Ծավալել են շին. լայն աշխ-ներ, հիմնել հիվանդանոցներ, տպարան, ստեղծել գրադարաններ, թատրոն: Զարգացել են հայ դպրությունն ու մշակույթը: Հայ վա-ճառականների մենաշնորհին էր Արևելքի հետ կատարվող առևտուրը. միևնույն ժամանակ նրանք հաճախ կատարել են նաև դիվանագիտ. առաքելություններ: Շատ հայեր մասնակցել են ուկր. ժողդ-ի ազատագր. պայքարին: Զապորոժյան Սեչում, Ումանում, Ձերկասիում դեռևս XVI դ-ում նրանք մտել են կազակ. զորա-միավորումների մեջ և կռվել թուրք-թա-թար. հորդաների դեմ, սակայն հետզհետե զրկվել են իրենց արտոնություններից, իսկ բռնի կաթոլիկացումից խուսափելով՝ լքել են նաև իրենց բնակավայրերը: Սևծով. նվիճգստ-ներում հայերը հաստատվել են հիմնականում XIX դ-ում և ստեղծել իրենց վաճառատները: XIX դ-ից սկսած՝ Ու-ի բուհերում, հատկապես՝ Կիևի, Խարկովի, Օդեսայի համալսարաններում կրթություն են ստացել հարյուրավոր հայ երիտա-սարդներ: Նրանք մասնակցել են տեղի հաս-քաղ. կյանքին, ստեղծել հայրենակց., ուսանող. կազմ-յուններ:

ԱՀՊ-ի տարիներին հայերի թիվն Ու-ում աճել է ի հաշիվ Արմ. հայաստանից և Թուրքիայի հայաբնակ վայրերից այստեղ ապաստանած հայ փախստականների: Պատերազմի վերջին հայերի թիվն Ու-ում շուրջ 100 հզ. էր: ՀՄՊ-ի տարիներին հազարավոր հայ մարտիկներ մասնակցել են Ու-ի պաշտպ. և ազատագր. մարտե-րին: Ու-ի տարածքում մղված կռիվներին մասնակցել են հայկ. զորամիավորումնե-րը: Ու-ի պաշտպ-յան ժամանակ աչքի են ընկել հայ զորավարներ՝ գնդ-ներ Մ. Պար-սեղովը, Բ. Առուշանյանը, Հ. Բաղրամյանը: Կիևն ազատագրող զորքերի մեջ էր Ս. Մարտիրոսյանի կորպուսը: Հայ պարտի-զաններն ընդգրկված էին Ու-ում գործող 18 պարտիզան. խոշոր միավորումների մեջ, գործում էին առանձին հայկ. ջոկատ-ներ: Պատերազմից հետո շատ կաթոլիկ հայեր Ու-ից տեղափոխվել են Լեհաստան: 1959-ին Ու-ում բնակվում էր 28 հզ. հայ:

Հայաստանում 1988-ի երկրաշարժից հետո և 1990-ական թթ-ին մի քանի հազար հայաստանցիներ բնակություն են հաստատել Ու-ի արդ. և ծովափնյա քաղաքներում: Աշխուժացել է հայ ազգ. կյանքը: Ու-ի գրեթե բոլոր խոշոր քա-ղաքներում հիմնվել են հայկ. մշակութ. ընկ-ներ, կիրակնօրյա դպրոցներ և հայ-ի ուսուցման խմբակներ:

Ու-ում հայերի թիվը ներկայում 100–130 հզ. է: Խոշոր հայկ. համայնքներ կան Օդե-սայում (30 հզ.), Դոնեցկում (15 հզ.), Դնեպ-րոպետրովսկում (14 հզ.), Խարկովում (12 հզ.), Կիևում (ավելի քան՝ 10 հզ.): Հայերի մի մասն Ու-ից հեռացել է երկրում տնտ. ճգնաժամի և հվ-արև-ում սկսված քաղա-քաց. պատերազմի (2014-ից) պատճառով: 2001-ին ստեղծվել է Ու-ի հայերի միութ-յունը (նախագահներ՝ Աշոտ Ավանեսյան, Ռոման Բալայան, Նվեր Մխիթարյան, Հայկ Փամբուկչյան, Վիլեն Շատվոր-յան՝ 2011-ից), որն ունի 24 տարածաշրջ. համայնքներ և 3 ներկայացուցչություն: Հրատարակվում են «Արագած» և «Մաս-յաց աղավնի» թերթերը, «Սուրբ խաչ» հանդեսը: Ու-ի տարածքում ներկայում գործում են Օդեսայի Սբ Գրիգոր Լուսա-վորիչ (1995), Մակեևկայի Սբ Խաչ (1998) եկեղեցիները, որոնք ընդգրկված են Ու-ի հայոց թեմի մեջ (կազմավորվել է 1991-ին): Առաջնորդանիստը Լվովի Սբ Աստվա-ծածնի Վերափոխման (1363) եկեղեցին է:

«ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆ-ՐԱԳԻՏԱՐԱՆ», ուկր. առաջին համա-պարփակ հանրագիտարանը (1-ին հրտ., հ. 1–17, 1959–65, ուկր. 2-րդ հրտ., հ. 1–12, 1977–85, ուկր. և ռուս.): Լույս է ընծայվել նաև «Ուկրաինական հանրագիտական բառարան» (հ. 1–3, ուկր.՝ 1966–68, ռուս.՝ 1988–90):

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱ-ԳՐՈՒԹՅՈՒՆ, սկզբնավորվել է Լվովում (տես ***Լվովի հայկական տպագրություն***), իսկ մինչ այդ և դրան զուգընթաց՝ Ուկրաինայի հայաշատ վայրերում, մասնավորապես՝ Ղրիմում՝ Կաֆայում (Թեոդոսիա) և Սուր-խաթում գործել են գրչության կենտրոններ (տես ***Կաֆայի գրչության կենտրոն***, ***Սուր-խաթի գրչության կենտրոն***): Ուկրաինայում XX դ-ի սկզբից հրատարակվել են հայկ. պարբ-ներ (Օդեսա, Կիև, Թեոդոսիա, Սիմ-ֆերոպոլ, 12 անուն), որոնք հիմնականում կարճ կյանք են ունեցել:

ՈՒԿՐԱԻՆԱՑԻՆԵՐ, ժողդ, Ուկրաինա-յի հիմն. բնակչությունը (37,5 մլն, 2001): Ապրում են նաև ՌԴ-ում (2,9 մլն, 2002), Մոլդովայում (442,5 հզ., 2004), Ղա-զախստանում (336 հզ., 2009), Բելառու-սում (237 հզ., 1999), ԱՄՆ-ում (673 հզ., 2000), Կանադայում (300,6 հզ., 2006) և այլ երկրներում (ընդհ. թիվը՝ 45 մլն): Լեզուն՝ ուկր.: Հավատացյալները հիմնա-կանում ուղղափառ քրիստոնյա են:

ՈՒԿՐԱԻՆԵՐԵՆ, ***ուկրաինացիների*** լեզուն, Ուկրաինայի պետ. լեզուն: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի սլավոն. ճյուղին: Գրի հիմքում ռուս. այբուբենն է:

ՈՒԿՐԱԻՆԿԱ, Լեսյա (Կոսաչ-Կվիտկա Լարիսա Պետրովնա, 1871–1913), ուկ-րաինացի գրող: Օ. ***Պչիլկայի*** դուստրը: Հեղինակ է «Երգերի թևերով» (1893), «Խոհեր ու երազանքներ» (1899), «Արձա-գանքներ» (1902) բանաստեղծությունների ժող-ների, «Գերության երգեր» (1895–96), «Ազատության երգեր» (1905) բանաս-տեղծ. շարքերի, «Կատակոմբներում» (1905), «Բաբելոնյան գերություն» (1908) խորհրդանշական-այլաբան. պոեմների, «Կասանդրա» (1908), «Քարե տիրակա-լը» (1912) պատմ. և առասպել. թեմանե-րով դրամաների, «Աշնանային հեքիաթ» (1905) «ֆանտաստիկ դրամայի», նաև պատմվածքների, վիպակների, քննա-դատ. հոդվածների: Հայ. հրատարակվել է «Լիրիկա» (1971) ժող-ը:

ՈՒՀԱՆ, ք. Չինաստանի Հուբեյ պրովին-ցիայում՝ Հանշույ գետի՝ Յանցզիին միա-խառնվելու վայրում: Բն.՝ ավելի քան 4,3 մլն, ագլոմերացիայում՝ ավելի քան 4,7 մլն (2010): Խոշոր արդ. կենտրոն է: Կազ-մավորվել է 1953-ին Հանկոու, Հանյան և Ուչան ք-ների միացմամբ:

ՈՒՂԱՆՑ, ***էստակադ***, վերգետնյա կամրջային կառույց տրանսպորտ. մի-ջոցների (հետիոտների), ճարտարագիտ. հաղորդակցության, բեռնման-բեռնա-թափման աշխ-ների ապահովման համար են: Բաղկացած է մի շարք հենարաններից և միատեսակ թռիչքներից:

ՈՒՂԱՆՑՈՒՀՑ, ***վիադուկ***, խոր ձորի, լեռն. կիրճի, ճահճ. գետահովտի վրա կառուց-ված, սովորաբար՝ երկար, բարձր հենա-րաններով կամուրջ (քարաշեն, բետոնե, երկաթբետոնե, մետաղե): Ըստ կառուց-վածքի՝ լինում է բազմաթռիչք կամարա-կապ, հազվադեպ՝ հեծանային: Քարաշեն Ու-ները հայտնի էին Հին Հռոմում:

ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ գրական, ժանր, որի հիմքում ճանապարհորդի նկարագրութ-յունն է ընթերցողին անհայտ կամ քիչ հայտնի երկրների, տարածքների, ժողդ-ների մասին՝ գրառումների, օրագրերի, ակնարկների և հուշագրումների ձևով: Ճանաչողականից բացի կարող է ունե-նալ գեղագիտ., փիլ., հրապարակախոս. և այլ նշանակություն: Գր. Ու-յան հատուկ տեսակ է մտացածին ճամփորդությու-նների մասին պատմությունները՝ գա-ղափար-գեղ. տարրի գերակշռությամբ, սակայն կողմնորոշված են փաստագր. ճանապարհորդության կոմպոզիցիոն սկզբունքներ (օր.՝ Ն. Վ. Գոգոլի «Մեռած հոգիները», տես նաև ***Ուտոպիա, Ֆան-տաստիկա***): Հայ գրկ-յան մեջ Ու-ներ են գրել Մ. Թաղիադյանը («Ճանապար-հորդութիւն ի Հայս»), Րաֆֆին («Աղթա-մարա վանքը», «Ճանապարհորդություն Թիֆլիսից մինչև Ագուլիս», «Երկու ամիս Աղվանից և Սյունաց աշխարհներում»), Ս. Կապուտիկյանը («Քարավանները դեռ քայլում են»), Բ. Սիմոնյանը («Պատկեր-ներ Լիբանանից») և ուր.:

ՈՒՂԵՐԱԿԱՅԱՆ, օդաչուավոր և ավտո-մատ տիեզ. թռչող սարք, որը տևականո-րեն գործում է Երկրի, այլ մոլորակների,

օր.՝ Լուսնի շուրջը: Ու–ներն ուղեծիր են հասցվում աշխ–ի պատրաստ (համալրված) վիճակում կամ մոնտաժվում են տիեզերքում: Ու–ում արվում են Երկրի կամ տիեզ. տարածության հետազոտություններ, բժշկականսբ., տեխ. փորձեր և այլ աշխ–ներ: 1971–ից արձակվել են 7 «Սալյուտ» Ու–ներ, «Միր» Ու. (ԽՍՀՄ), «Սքայլըբ» Ու. (ԱՄՆ), միջազգ. տիեզ. կայաններ:

ՈՒՂԵՂԱԲՈՐԲ ՃԱՊՈՆԱԿԱՆ, մարդու սուր վիրուս. հիվանդություն: Ախտանշանները՝ տենդ, գիտակցության խանգարումներ, լուծանքներ: Փոխանցողները մոծակներն են: Բնորոշ է սեզոն. հիվանդությունը՝ կապված մոծակների ակտիվության բարձրացման հետ:

ՈՒՂԵՂԱՊԱՏՅԱՆԱԲՈՐԲ, մենինգիտ (հուն.՝ meninx – ուղեղապատյան), գլխուղեղի և ողնուղեղի պատյանների թարախ. կամ շճային բորբոքում: Հարուցվում են բակտերիաներով, վիրուսներով ևն: Առաջանում է որպես ինքնուրույն հիվանդություն կամ այլ կենսընթացների բարդություն է: Դրսևորվում է գլխացավերով, փսխումներով, գիտակցության խանգարումներով ևն:

ՈՒՂԵՂԻ ՑՆՑՈՒՄ, **կոմոցիա** (լատ.՝ commotion – ցնցում), գլխուղեղի փակ վնասվածք: Ախտանշանները՝ գունատություն, գլխապտույտ, սրտխառնոց, փսխում, գիտակցության կորուստ, թույլ անոթազարկ, անկանոն շնչառություն: Առաջին օգնությունը՝ գլխին սառույց դնել և լրիվ հանգիստ ապահովել:

ՈՒՂԵՂԻԿ, գլխուղեղի (հետին ուղեղի) ցողունի մաս: Կազմված է հնագույն (որդ) և ֆիլոգենետիկորեն նոր (կիսագնդեր) բաժիններից: Վերջինս զարգացած է միայն կաթնասունների մոտ: Կարևոր նշանակություն ունի մարմնի հավասարակշռության պահպանման և շարժումների համաձայնեցման համար:

ՈՒՂԻՂ ԱՂԻ, աղիք. ամբողջ ուղու վերջին մասը՝ կարճ, ուղիղ խողովակի տեսքով, որը վերջանում է հետանցքի բացվածքով:

ՈՒՂԻՂ ԱՂԻԻ ԱՐՏԱՆԿՈՒՄ, ուղիղ աղիի մասնակի կամ լրիվ դուրս գալը հետանցքի բացվածքով՝ շեքի և կոնքի հատակի հյուսվածքների թուլացման հետևանքով: Ուղղակի պատճառներից են ֆիզ. մեծ բեռնվածությունը, վնասվածքները ևն: Նկատվում է նաև կենդանիների մոտ:


ՈՒՂԻՂ ԱՆԿՅՈՒՆ, իր կից անկյանը հավասար անկյուն: Աստիճան. չափը 90^o է, ռադիանայինը՝ $\varpi/2$:

ՈՒՂԻՂ ԳԻԾ, *երկրաչափության* հիմն. հասկացություններից: Երկրչփ–յան համակարգված շարադրանքում Ու. գ. սովորաբար ընդունվում է որպես ելակետ. հասկացություններից մեկը, որը սահմանվում է որպես ամենակարճ հեռ–յունը՝ 2 կետերի միջև:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ, որևէ լեզվի հնչույթների գրության ընդունված կանոնների համակարգը: Ու–յան սկզբունքները 3–ն են՝ հնչյուն., ձևաբան. կամ ստուգաբան., ավանդ. կամ պատմ.:

ՈՒՂՂԱԹԵՎՆԵՐ (Orthoptera), միջատների կարգ: Ունեն ծակող կնճիթիկ և թափանցիկ թևեր: Երկ.՝ 0,5–65 *մմ*: Հայտնի է ավելի քան 30 հզ. տեսակ: Մի շարք տեսակներ վնասում են գղտ. բույսերը: Ենթակարգերն են ցիկադայինները, տերևալվիկները, լվիճները, սպիտակաթևիկները, կոկցիդները:

ՈՒՂՂԱԹԻՌ, հելիկոպտեր (< հուն. helix – պտուտակ և pteron – թև), օդից ծանր թռչող սարք, որի *վերամբարձ ուժը* և հորիզոն. ուղղությամբ քարշուժն ստեղծում են 1 կամ մի քանի կրող *պտուտակները*: Ու–ները լինում են ղեկային (պոչային) պտուտակով, միապտուտակ, երկ– և բազմապտուտակ: Ու–ի թռիչքի արագությունը մինչև 350 *կմ/ժ* է, բեռնամբարձությունը՝ մինչև 40 *տ*: Օգտագործում են ուղևորաև բեռնափոխադրման համար և հատուկ նպատակներով (բժշկ. սպասարկման, մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի, հրդեհաշրջման ևն), նաև ՋՈՒ–ում (հակատանկ., հրաձգ. աջակցման, հակասուզանավ., փոխադրամիջոց. և այլ Ու–ներ): Միապտուտակ սխեմայի Ու–ի մոդելն առաջին անգամ կառուցել է Բ. Ն. *Յուրևը* 1910–12–ին: 1–ին սերիական Ու.՝ Մ–1–ը, ստեղծվել է Մ. Լ. *Միլի* ՀԿԲ–ում (1948):



Ուղղաթիռների հիմնական սխեմաները. 1. պտուտակների խաչվող առանցքներով, 2. ընդհակայնական սխեմա, 3. միապտուտակի սխեմա, 4. համառանցք սխեմա, 5. ընդլայնական սխեմա

ՈՒՂՂԱՀԱՅՑ տվյալ ուղղին (հարթությանը), անվանում են տվյալ ուղիղը (հարթությունը) ուղիղ անկյան տակ հատող ուղիղը: Այդ դեպքում 2 ուղիղները (համապատասխանաբար՝ ուղիղը և հարթությունը) կոչվում են փոխադարձաբար Ու.: 2 հարթությունները կոչվում են փոխադարձաբար Ու., եթե նրանք կազմում են ուղիղ երկնիստ անկյուն:

ՈՒՂՂԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱՁԵՎ, որոշյալ ինտեգրալների մոտավոր հաշվման բանաձև (քառակուսացման բանաձև). ունի հետևյալ տեսքը՝

$$\int_a^b f(x)dx \approx h\sum_{k=1}^{n} f(x_k),$$

որտեղ $h = (b–a) / n$, $x_k = \xi + (k–1)\ h$, $a \le \xi \le a + h$, $k = 1, 2, \ldots, n$:

ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ, **օրթոդոքս** (հուն.՝ Orthodoxia – բառացի՝ ճիշտ ուղի, ճիշտ ուսմունք), **ուղղադավանություն**, 1. որևէ ուսմունքի, աշխարհայացքի հիմն. դրույթներին անշեղորեն հետևող ուղղություն: Քրիստ. եկեղեցու բաժանումից հետո (1024) իրենց ուղղափառ անվանեցին Բյուզ. և նրան հետևող եկեղեցիները: 2. Քրիստոնեության հիմն. ուղղություններից: Հռոմ. կայսրության բաժանումից հետո (395) քրիստ. եկեղեցին սահմանազատվել է հռոմ. և հուն. մասերի. 1054–ից հետո հռոմ. եկեղեցին կոչվել է կաթոլիկ., իսկ բյուզ. եկեղեցին՝ ուղղափառ: Ու–յան զարգացման ընթացքում առաջացել են 15 ինքնավար (ավտոկեֆալ) եկեղեցիներ՝ Կ. Պոլսի, Ալեքսանդրիայի, Անտիոքի, Երուսաղեմի, ռուս., վրաց., սերբ., ռում., բուլղ., Կիպրոսի, Հելլադայի (հուն.), ալբ., լեհ., չեխ., սլովակ. և ամերիկ.: Ու–յան դավանաբանության հիմքում աստված. հայտնությունն է՝ ամփոփված Սբ գրքում և Սբ Հայտնության մեջ՝ ներառյալ Տիեզ. 7 ժողովների դրույթները, եկեղեցու հայրերի պատարագ. և աստվածաբան. երկերը: Ու–յան հիմն. դոգմաներն են Աստծու եռմիասնությունը, Աստծու Որդու մարմնացումը, Աստվածամարդ Հիսուս Քրիստոսի երկակի էությունը, նրա քավիչ զոհողությունը, Հարությունն ու Համբարձումը, մոտալուտ երկրորդ գալուստը և ահեղ դատաստանը, մարդու փրկության հարցում Աստծու և մարդու համագործակցությունը, պատկերապաշտությունը: Ու–յան դավանաբանությունը հակիրճ ամփոփված է Հավատո հանգանակում (հաստատվել է ժողովներում): Ու–յան դոգմաները ենթակա չեն փոփոխման, հիմքում ընկած են 7 *խորհուրդները*, աստիճանակարգության մեջ տարբերակված է սրբության 3 աստիճան՝ սարկավագներ, քհն–ներ, եպս–ներ:

ՈՒՂՂԻՉ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ, *փոփոխական հոսանքը հաստատուն հոսանքի* փոխակերպող հարմարանք: Սովորաբար հոսանքն ուղղում են էլ. փականով, որը լինում է վակուում., գազապարպում., կիսահաղորդչ., էլեկտրահպում.: Կիրառում են ավտոմատիկայի և հեռուստամեխանիկայի, ռադիոտեխնիկայի (միաֆազ Ու. է.) սարքերում և հզոր արդ. սարքավորումների (եռաֆազ Ու. է.) սնուցման համար:

ՈՒՂՂՈՐԴՎԱԾ ՊԱՅԹՅՈՒՆ, պայթյուն, որով, որպես կանոն՝ հանքապարները տեղափոխվում են անհրաժեշտ ուղղությամբ: Տարբերում են նետող պայթյուններ (թեք կամ ուղղագիծ ազատ մակերևույթների առկայության դեպքում) և արտանետող պայթյուններ (երբ ազատ մակերևույթը հորիզոնական է): Պայթուցիկ նյութերի գումար. զանգվածը կարող է հասնել մի քանի հզ. *տ*–ի: Ու. պ. կիրառում են ջրանցքների շին–յան, օգտ. հանածոների հանքավայրերի մշակման, հզոր ամբարտակների ստեղծման և այլ նպատակներով:

ՈՒՂՏԱՅԾԵՐ (Lama glama), **լամաներ**, ուղտերի ընտանիքի երկկճղակավոր կենդանիների սեռ: Երկ.՝ 1,2–1,75 *մ*: Հայտնի է 2 տեսակ՝ գուանակո և վիկունյա: Ապրում են բարձրլեռն. Անդերում: Երկու ձևերը (գուանակո և ալպակա) ընտելացված են, բազմացնում են արժեքավոր բրդի համար: Օգտագործում են որպես բեռնակիր կենդանիներ:

ՈՒՂՏԱՆՄԱՆՆԵՐ, երկկճղակավոր կենդանիների ընտանիք: Երբեմն դասում են կոշտուկոտների կարգին: Առաջացել են Հս. Ամերիկայում, որտեղից տարածվել են Հվ. Ամերիկա և Արլ. կիսագունդ: Կան 2 ժամանակակից սեռեր՝ ուղտեր և լամաներ:

ՈՒՂՏԱՊԱՐԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, ՀՀ Արարատի մարզում: Ձորաժան է Միլի գետի Ուղտակունք և Քաջառու վտակների միջև: Սկսվում է Գեղամա լ–շղթայի հվ. արմ. լանջից, Ազատ գետի վերնագավառով ձգվում արմ.: Բարձր.՝ մինչև 3170 *մ* (Ուղտասար լ.): Հս–արմ. լանջերը ժայռոտ են և ուղղորդ քարափներով իջնում են մինչև 700–800 *մ* խոր–յամբ տաշտակաձև հովիտը: Բուսածածկույթը լ–տափաստանային և լ–մարգագետնային է: Գետահո-

վիտներում կան կաղնուտներ, լանջերին (2700–2800 *մ*)՝ աղբյուրներ: Բարձրադիր մասերում պահպանվում են ռելիեֆի սառցաղաշտ. ձևեր:

ՈՒՂՏԱՄՈՒՐ, լ. ՀՀ Սյունիքի բարձրավանդակում՝ Սիսիանից մոտ 30 *կմ* հեռու, բարձր.՝ 3000–3300 *մ*: Նման է սապատավոր ուղտի: 1968-ին Ու–ում հայտնաբերվել է ժայռապատկերներով հարուստ հնավայր:

ՈՒՂՏԱՓՈՒՇ (Alhagi), **արաք**, բակլազգիների (թիթեռնածաղկավորներ) ընտանիքի բազմամյա խոտաբույսերի և կիսաթփերի ցեղ: Հայտնի է 7 տեսակ՝ Եվրասիայի և Աֆրիկայի անապատներում ու կիսաանապատներում, ՀՀ–ում՝ 2՝ Սյունիքի, Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Գեղարքունիքի և այլ մարզերում: Ուղտերի համար լավ կեր է, ցանքսերում՝ մոլախոտ: Օգտագործում են նաև որպես վառելիք: Մեղրատու է:

ՈՒՂՏԵՐ (Camelus), ուղտանմանների ընտանիքի երկկճղակավոր կենդանիների սեռ: Երկ.՝ մինչև 3,4 *մ*: Հայտնի է 2 տեսակ՝ դրոմեդար (միասապատ) և բակտրիան (երկսապատ): Վայրի վիճակում պահպանվել է բակտրիանը: Ընտանեցվել են: Բեռնակիր, լծկան կենդանիներ են, օգտագործում են կաթը, միսը, բուրդը:

ՈՒՂՏԻԿՆԵՐ (Raphidioptera), միջատների ընտանիք: Երկ.՝ 7–15 *մմ*: Առաջնակուրծքը ձգված–երկարացած է և ուղտի պարանոցի նման կորացած (այստեղից՝ անվանումը): Հայտնի է մոտ 170 տեսակ: Գիշատիչներ են, ոչնչացնում են խոտակեր միջատներին, հատկապես՝ արմատակեր բզեզների թրթուրներին:

ՈՒՄԲԻԵԼ, *Ումբանի* արբանյակ. հայտնաբերել է Ու. *Լասելը* (Սալթա կղզի, 1851):

ՈՒՄԵԿՅԱՆՆԵՐ, մեծահարուստ տոհմ XIII–XIV դդ–ում: Հիմնադիրը մանազկերտցի Ճարի որդի Ումեկն է, որը նախ հաստատվել է Կարինում, ապա 1240-ական թթ–ին տեղափոխվել Տփղիս, Մեյդան թաղամասում կառուցել Սբ Գևորգ եկեղեցին, Քաջարյաններից գնել Նոր Գետիկի վանքը՝ իր մերձակա կալվածքով: Ումեկի մահից (1267) հետո նրա գործը շարունակել են որդիները՝ Քարիմատինը (ձեռք է բերել իշխան. կոչում) և Ճարը: Ու–ի տոհմին վերաբերող հայտնի վերջին տեղեկությունը թվագրված է 1345-ով:

ՈՒՄԻԿՅԱՆ Հայկ Արշակի (1916–1985), դերասան, ռեժ.: ՎԽՍՀ (1981), Աբխազ. ԻԽՍՀ (1983) արվ. վաստ. գործիչ: 1936–ից՝ Թբիլիսիի հայկ. դրամատիկ. թատրոնի դերասան (Սարմարով՝ Գ. Սունդուկյանի «Քանդած օջախ», Մելքոն՝ Շիրվանզադեի «Քաոս», Ռոդրիգո՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», ևն), ապա՝ ռեժ. (1974–77–ին՝ գլխ. ռեժ.): Բեմադրել է Սունդուկյանի «Խաթաբալա», Ն. Դումբաձեի «Մեղադրական եզրակացություն», Ժ. Անանյանի «Տաքսի, տաքսի» և այլ գործեր:

ՈՒՄԻԿՈՎ, Զաքար Ներսեսի (1906–2004), ճարտարագետ, կոնստրուկտոր, գործն. հիդրոձայնագիտ–յան հիմնադիրը ԽՍՀՄ–ում: Ներսես *Ումիկովի* հայրը: 1936–41–ին՝ «Օրիոն» ՀԿԲ–ի, ապա՝ մի քանի այլ ԿԲ–ների և ԳՀԻ–ների գլխ. կոնստրուկտոր: 1992–96–ին՝ ՌԴ հիդրոձայնագիտ–յան սարքերի ընդունման պետ. հանձնաժողովի նախագահ: Աշակել է ԽՍՀՄ–ում առաջին անդրաձայն. խորաչափերը, սուզանավերի 1–ին հիդրոձայն. համալիրը, ջր. ականները: Հիդրոձայնագիտ. մեթոդների հիման վրա առաջարկել է բժշկ. սարքերի ստեղծման տեխնոլոգիա: Նրա ղեկավարությամբ նախագծվել է թրթռային զգայունությունը չափող սարք: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1949), Կարմիր աստղի շքանշան:

ՈՒՄԻԿՈՎ, Ներսես Զաքարի (1865–1956), մանկաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1895): ՎԽՍՀ գիտ. վաստ. գործիչ: Զաքար *Ումիկովի* որդին: Ու–ի՝ նախաձեռնությամբ Թիֆլիսում ստեղծվել է «Բելայա Ռոմաշկա» հակատուբերկուլոզ. շարժ. բուժարան, 1913–ին՝ առաջին մանկ. հիվանդանոցը, որի հիմքի վրա հիմնադրվել է Թբիլիսիի բժշկ. ինստ–ի մանկ. հիվանդությունների կլինիկան: Մասնակցել է Վրաստանում և Բելոռուսիայի Վիտեբսկի մարզում բռնկված խոլերայի համաճարակի դեմ պայքարին:

ՈՒՄՄԱ, հինշումեր. ք–պետություն Հվ. Միջագետքում (ներկայի Ջողա ք–ը՝ Իրաքում): Մ. թ. ա. III հզ–ամյակում պայքարել է Միջագետքում գերիշխանության համար: Մ. թ. ա. XXIV դ–ի վերջին Սարգոն Հինը գրավել է Ու.:

ՈՒՄՈՎ, Նիկոլայ Ալեքսեևիչ (1846–1915), ռուս. ֆիզիկոս–տեսաբան: Ներմուծել է էներգիայի հոսքի խտության գաղափարը (*Ումովի վեկտոր*), սահմանել էներգիայի շարժման հավասարումը: Աշխ–ները վերաբերում են Երկրի մագնիսականությանը, դիֆուզիային ևն:

ՈՒՄՈՎԻ ՎԵԿՏՈՐ, ֆիզ. դաշտի էներգիայի հոսքի խտության վեկտոր: Թվապես հավասար է միավոր ժամանակում էներգիայի տարածմանը՝ տվյալ կետում ուղղահայաց միավոր մակերեսով տեղափոխվող էներգիային: Կոչվել է (1874) առաջին անգամ հոծ միջավայրում էներգիայի հոսքի գաղափարը ներմուծած Ն. Ա. *Ումովի* անունով: Էլեկտրամագնիս. դաշտի էներգիայի հոսքի խտության վեկտորը կոչվում է *Պոյնտինգի վեկտոր*:

ՈՒՄՐ–ՇԱՏ Վաչե Վահանի (1922–1998), մանկավարժ, դաշնակահար: ՀՀ վաստ. ուսուցիչ (1962): Պրոֆ. (1992): 1963–98–ին դասավանդել է Կոմիտասի անվ. կոնսերվատորիայում: Ստեղծել է դաշնամուրի դասավանդման մեթոդ: Սաներից են Սվետլանա Նավասարդյանը և ուր.:

ՈՒՅԱՀՅԱ, Ահմեդ (ծ. 1952), Այժիրի վարչապետ՝ 1995–98, 2003–06, 2008–12–ին և 2017–ից: 2000–13–ին՝ Դեմոկրատ. ազգ. միավորում կուս–յան առաջնորդ:

ՈՒՅՂՈՒՆ (Աթակուզիև Ռահմաթուլա, 1905–1990), ուզբեկ գրող: Ուզբ. ԽՍՀ ժող. գրող (1965): Սոց. աշխ. հերոս (1985): Հեղինակ է «Ուզբեկստան» (1947), «Երգ սիրո մասին» (1975) քնար. բանաստեղծությունների ժող–ների, «Երկու դարաշրջան» (1967), «Աբու Ռեյհան Բիրունի» (1973), «Աբու Ալի իբն Սինա» (1980) պիեսների, նաև կինոսցենարների, պատմվածքների:

ՈՒՅՂՈՒՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, *ույղուրների* գրկ.: Ույղուր. դպրությունն ու գր. մշակույթը սկզբնավորվել են VII–VIII դդ–ում: Դաս. Ու. գ–յան հուշարձանների նշանակալի մասը Միջին Ասիայի և Արլ. Թուրքեստանի մի շարք թյուրքալեզու ժողդ–ների ընդհ. ժառանգությունն է: XIV դ–ին է վերաբերում Ռաբղուզիի «Ասք մարգարեների մասին» գր. հուշարձանը: XV դ–ից պահպանվել է «Օղուզնամե» անանուն ձեռագիրը՝ ույղուր–ով:

Ու. գ–յան մեջ զարգացման հատուկ դարաշրջան է սկսվում Մուհամմադ Իմին Խիրկատի (1634–1724) ստեղծագործությամբ, այնուհետև հանդես են եկել Զալելին (մոտ 1674–1723) և Նովբատին: XVIII դ–ի վերջին և XIX դ–ի սկզբին հայտնի են դարձել բանաստեղծներ Շայիր Ախունը, Արշին, Նորուզախուն Զիյային, Տուրդը Ղարիբին և ուր., առավել հայտնի է Աբդուռահիմ Նիզարիի (1770–մ. թ. անհտ) ստեղծագործությունը:

ՈՒՅՂՈՒՐԵՐԵՆ, **նոր ույղուրերեն**, *ույղուրների* լեզուն: Պատկանում է թյուրք. լեզվաընտանիքի հվ–արլ. (միջինասիական կամ կաղլուկյան) խմբին: Գրավոր հնագույն հուշարձաններն ավանդվել են V–IX դդ–ից: Գրի հիմքում արաբ., լատ. (1930–46, ԽՍՀՄ–ում), ռուս. (1946–ից) այբուբենն է:

ՈՒՅՂՈՒՐՆԵՐ (ինքնանվանումը՝ ույղուր), ժողդ Չինաստանի հս–ում (հիմնականում՝ Սիցզյան–Ույղուր. Ինքնավար Շրջանում): Ընդհ. թիվը՝ շուրջ 8,4 մլն (2000): Ապրում են նաև Ղազախստանում (224 հզ., 2009), Ուզբեկստանում (շուրջ 50 հզ.), Ղրղըզստանում (46,9 հզ., 1999) և այլուր: Լեզուն՝ *ույղուրերեն*: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են, կան նաև բուդդայականներ (յուգուներ):

ՈՒՆԱԲ (Ziziphus), դմ՛սիկազգիների ընտանիքի ծառերի կամ թփերի ցեղ: Հայտնի է 50 տեսակ՝ Ասիայի և Աֆրիկայի արևադարձներում և մերձարևադարձներում, ՀՀ–ում՝ 1 (սովոր. Ու.)՝ Տավուշի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերում: Ուտելի պտուղների համար մշակում են սովոր. Ու., որի բերքատվությունը 3–4 *ց/հա* է: Հիմն. մշակողը Չինաստանն է:

ՈՒՆԱՆՅԱՆ Ներսես (1920–1957), քանդ., գրաֆիկ: 1928–ից՝ Մոնտեվիդեոյում: Հեղինակ է քանդակների («Մերկ կինը», ոսկե մեդալ, 1942, ևն), հարթաքանդակների («Աղջիկները լողափին», ոսկե մեդալ, 1948, «Մտորում», 1944, «Խաչից իջեցնելը», 1948, «Մայրություն», 1949, «Տրիստան և Իզոլդա», ևն), գրքի պատկերազարդումների (Է. Պինտոյի և ուր.):

ՈՒՆԳԵՐ (Unger) Կարոլինա (Կառլոտա, 1803–1877), ավստրիացի երգչուհի (կոնտրալտո): Հանդես է եկել որպես կամեր. և օպեր. երգչուհի, ճանաչվել Վ. Բելլինիի, Գ. Դոնիցետտիի օպեր. դերերգերի, Լ. վան Բեթհովենի վոկալ–սիմֆ. երկերի, Վ. Ա. Մոցարտի, Ֆ. Շուբերտի երգերի կատարումներով:

ՈՒՆԴ, հատիկաընդավոր բույսերի միաբուն պտուղ, սովորաբար՝ գագաթից դեպի հիմքը բացվող 2 փեղկերով: Կենցաղում ճանաչված է որպես հատիկաընդավորների սերմ:

ՈՒՆԴՈԼՄԿԻ Վուկոլ Միխայլովիչ (1816–1864), ռուս մատենագետ, հնագրագետ, գրքասեր: Կազմել է XV դ–ի վերջ–XIX դ–ի կեսերին կիրիլիցայով տպագրված գրքերի գրացուցակը («Ակնարկ սլավոնառուսական մատենագիտության», հրտ.՝ 1871, շուրջ 4,7 հզ. անուն, ներառում է Պ. Գ. Դեմիդովի, Ա. Ա. Կաստերինի և ուր. անձն. գրադարանների գրացուցակները): Ունեցել է ձեռագրերի ու հնատիպ գրքերի հարուստ հավաքածու:

ՈՒՆԻԱ, (ուշ լատ.՝ unio – միավորում), 1. պետությունների միություն, միավորում. այսպես կոչված անհատ. (անձն.) Ու.՝ մեկ միապետի իշխանության ներքո, իրական Ու.՝ պայմանագրի կամ ավելի ուժեղ պետության միակողմանի ակտով: 2. Եկեղեց. Ու.՝ ուղղափառ, արլ. եկեղեցիների միավորումը Հռոմ. կաթոլիկ եկեղեցու հետ:

ՈՒՆԻԹՈՐՈՒԹՅՈՒՆ (լատ.՝ unitor – միաբանող), **միարարություն**, Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետ քրիստ. տարբեր եկեղեցիների միության (ունիայի) գաղափարի վրա հիմնված եկեղեց. ուղղություն, որն ընդունում է Հռոմի պապի գերագահությունը, կաթոլիկ. դավանանքը, ծեսը՝ պահպանելով ժամերգության ազգ. լեզուն: Գոյություն ունեն Արևելյան միացյալ (Uniate) եկեղեցիներ կամ պատրիարքություններ, ինչպիսիք են Մարոնիտ (1216), Քաղդեական (1553), Հույն (Մելքիդ՝ 1724), Ասորի (1783), Ղպտի (1824) կաթոլիկ պատրիարքությունները: 1742-ին կազմավորվել է Հայ կաթողիկե պատրիարքությունը:

«ՈՒՆԻՍՈՆ», ՀԿ, հիմնադրվել է 2002-ին Երևանում՝ հաշմանդամներին աջակցելու և նրանց իրավունքները պաշտպանելու նպատակով: Կազմակերպում է մրցույթներ, ցուցահանդեսներ, համաժողովներ, դասընթացներ ևն: «Ու.»-ին կից գործում է սայլակավոր հաշմանդամների կամեր. երգչախումբ (գեղ. ղեկ.՝ Ռաֆֆի Միքայելյան, տնօրեն՝ Արմեն Ալավերդյան), 2006-ից կից բացվել է Զբաղվածության կենտրոն հաշմանդամություն ունեցողների համար: «Ու.» 2005-ի համահայկ. փառատոնում ճանաչվել է իր բնագավառի ամենաակտիվ ՀԿ:

ՈՒՆԻՎԵՐՍԱԼԻԱՆԵՐ (լատ.՝ universalis – ընդհանուր), ընդհ. հասկացություններ, միջնադար. փիլ-յան կարևորագույն կատեգորիաներից և խնդիրներից: Ու-ի խնդրի լուծումն ունեցել է գոյաբան. (ընդհանուրի ինքնակա գոյությունը), իմացաբան. (հասկացությունների և իմացության գործընթացում դրանց առաջացման էությունը) և տրամաբ. (հասկացությունների և եզակի իրերի հարաբերությունը) տեսանկյուններ: Ու-ի գոյաբան. կարգավիճակի հարցը քննվել է տարբեր տեսանկյուններից՝ գոյություն ունե՞ն արդյոք Ու. «իրերից առաջ»՝ իբրև նրանց հավերժ. իդեալ. նախատիպեր (պլատոնականություն, ծայրահեղ ռեալիզմ), «իրերի մեջ» (արիստոտելիզմ, չափավոր ռեալիզմ), «իրերից հետո» (նոմինալիզմ, կոնցեպտուալիզմ): Ու-ի խնդիրը հայ փիլ-յան մեջ առաջին անգամ որոշակիացրել և վերլուծել է *Դավիթ Անհաղթը*: Ու-ի հարցին անդրադարձել են Հովհան Օձնեցին, Խոսրովիկ Թարգմանիչը, Հովհաննես Իմաստասերը, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Հակոբ Ղրիմեցին, Վահրամ Ռստանիկը և ուր. (դրսևորել են ակնհայտ նոմինալիստ. դիրքորոշում):

ՈՒՆԻՎԵՐՍՈՒՄ (լատ.՝ universum, summa rerum – ամբողջություն), փիլ. հասկացություն, որն աշխարհը դիտարկում է որպես մեկ ամբողջություն:

ՈՒՆԻՏԱՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, պետ. կառուցվածքի ձև, երբ պետության տարածքը բաժանված է ոչ թե դաշն. (նահանգ-ների, երկրամասերի ևն), այլ վտմ-ների (շրջաններ, մարզեր ևն): ՀՀ-ն պետ. կառուցվածքով Ու. պ. է:

ՈՒՆԴՍԵԹ (Undset) Սիգրիդ (1882–1949), նորվեգուհի գրող: Հեղինակ է «Ֆրու Մարթա Էուլի» (1907), «Գարուն» (1914), «Աուդունի որդի Ուլավը» (հ. 1–4, 1925–27) վեպերի, «Լավրանսի դուստր Քրիստինը» (1920–22) հոգեբ. եռերգության, «Փուլեր» (1929) էսսեների ժող-ի, «Տասնմեկ տարի» (1934) հուշագրության, նաև նովելների:

Նոբելյան մրց. (1928):

ՈՒՆՑ (Unt) Մատի (1944–2005), էստոնացի գրող, ռեժ., սցենարիստ: 1992–2013-ին՝ Տալլինի դրամատիկ. թատրոնի ռեժ.: Հեղինակ է «Մնաս բարով, շիկակարմիր կատու» (1963), «Տիեզերքում կյանքի գոյության հնարավորության մասին» (1967), «Արքայական ճանապարհ» (1975) վիպակների, «Աշնանային պարահանդես» (1979), «Գիշերվա մեջ թաքնված իմաստը» (1990) վեպերի, «Խոսում են և լռում» (1986) պատմվածքների ժող-ի, թատրոնի մասին (2004) աշխ-յան, նաև պիեսների, սցենարների:

ՈՒՇԱԹԱՓՈՒԹՅՈՒՆ, անոթ. լարման կարճատև անկում, որն ուղեկցվում է գլխուղեղի սակավարյունությամբ, դրսևորվում է հանկարծակի թուլությամբ, գլխապտույտով, գիտակցության կորստով (մի քանի *վ* կամ *ր*): Նկատվում է սիրտանոթ. համակարգի որոշ հիվանդությունների, արյան կորստի, սուր ցավերի, ուժեղ ապրումների ժամանակ: Առաջին օգնությունը. հիվանդին պառկեցնում են՝ ոտքերին թեթևակի բարձր դիրք տալով, հագուստն արձակում են, դեմքը ցողում սառը ջրով, շնչել տալիս անուշադրի սպիրտ, քացախ կամ օդեկոլոն:

ՈՒՇԱԿՈՎ Դմիտրի Նիկոլաևիչ (1873–1942), ռուս լեզվաբան: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1939): Հեղինակ է «Ռուսական բարբառագիտության ուրվագիծ՝ Եվրոպայում ռուսերենի բարբառների առաջին քարտեզհավելվածով» (1915, Ն. Ն. Դուռնովոյի, Ն. Ն. Սոկոլովի հետ), «Լեզվագիտության համառոտ ներածություն» (1913), «Ռուսերենի ուղղախոսությունը և նրա խնդիրները» (1928), «Ճիշտ արտասանության հարցի շուրջ» (հրտ.՝ 1964) և այլ աշխ-ների:

ՈՒՇԱԿՈՎ Սերգեյ Նիկոլաևիչ (1893–1964), ռուս քիմիկոս-օրգանիկ և տեխնոլոգ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1963): Աշխ-նե-րը վերաբերում են ֆենոլալդեհիդ. կոնդենսմանը, վինիլային միացություններից ստացվող պոլիմերների սինթեզին և ուսումնասիրությանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942, 1950):

ՈՒՇԱԿՈՎ Սիմեոն Ֆեոդորովիչ (1626–1686), ռուս սրբանկարիչ, գծանկարիչ, գեղանկարիչ: 1664-ից՝ Սոսկվայի Զինապալատի գեղանկարչ. արվեստանոցի ղեկ.: Գործերում (սրբապատկերներ, պարսունաներ, մանրանկարներ) ռուս. ավանդ. սրբանկարչության հնարքները համադրել է ծավալուն լուսաստվեր. ծեփակերտ ձևերի հետ՝ աշնավորելով միջնադար. կրոն. արվ-ից աշխարհիկին անցումը («Պայծառակերպություն», 1673): Հեղինակ է սրբանկարչության մասին աշխ-յան (մոտ 1666):

ՈՒՇԱԿՈՎ Ֆեոդոր Ֆեոդորովիչ (1745–1817), ռուս. ծովակալ (1799): Ռուսաստանի Սևծով. նավատորմի ստեղծողներից: 1790–92-ին՝ Սևծով. նավատորմի և Նովինզստ-ների հրամ.: 1790–1802-ին՝ Սևաստոպոլի քաղաքապետ և Սևաստոպոլյան առագաստանավատորմի հրամ.: Մշակել և կիրառել է մաննրային մարտավարություն, փայլուն հաղթանակներ է տարել թուրք. նավատորմի նկատմամբ Կերչում, Թենդրա կղզում (1790), Կալիակրիա հրվանդանի մոտ (1791): Ֆրանսիայի դեմ պատերազմի ժամանակ հաջողությամբ իրագործել է ռուս. նավատորմի Միջերկրածով. արշավանքը (1798–1800): Հուն. Յոթ կղզիների միացյալ հանրապետության (Ռուս. և Օսմ. կայսրությունների հովանավորության ներքո) ստեղծման գործում դրսևորվել է որպես հմուտ քաղաքագետ ու դիվանագետ: ՌՈՒԵ սրբադասել է Ու-ին (2004):

ՈՒՇԻՆՍԿԻ Կոնստանտին Դմիտրևիչ (1824–1870), ռուս մանկավարժ: Ռուսաստանում գիտ. մանկավարժության հիմնադիրը: Ու-ու մանկավարժ. համակարգի հիմքը կրթության և ուսուցման ժողովրդականացումն էր: Հեղինակ է «Մարդը որպես դաստիարակության առարկա» (հ. 1–2, 1868–69), «Ժողովրդայնության մասին հասարակական դաստիարակության մեջ» (1857) և այլ աշխ-ների, կազմել է «Մանկական աշխարհ» (1861, հայ.՝ 1866), «Մայրենի լեզու» (1864, հայ.՝ 1868) ընթերցարանները, որոնք գործում են նաև հայկ. դպրոցներում:

ՈՒՇՈՒ, Ու-շու, անհատականության կատարելագործման չին. ավանդ. համակարգ: Ներառում է ֆիզ. վարժություններ՝ հավաքածու և տարբեր զենքերով կամ առանց դրանց մենամարտելու հնարքները: Ու-ի կրոնափիլ. հիմքն են *դաոսիզմը*, *բուդդայականությունը*, *կոնֆուցիականությունը*: Ու-ի միջազգ. ֆեդերացիայում (հիմն.՝ 1990) ընդգրկված է 60-ից ավելի երկիր (2015): Աշխարհի առաջնությունը՝ 1991-ից, Եվրոպայինը՝ 1990-ից: ՀՀ Ու-ի ֆեդերացիան (հիմն.՝ 1992) Ու-ի միջազգ. ֆեդերացիայի անդամ է 1997-ից:

«ՈՒՆՈՒԹԵՐԳԵՅԹՅԱՆ ԳՈՐԾ» ԱՄՆ-ում, 1972-ի նախագահ. ընտրարշավի ժամանակ (փորձ է արվել գաղտնալսող սարքեր տեղադրել Վաշինգտոնի «Ուոթերգեյթ» հյուրանոցում՝ Դեմոկրատ. կուս-յան նախավայրում) Հանրապետ. կուս-յան նախագահի վերընտրության գործով հակաօրին. գործողությունների հետ կապված իրադարձությունների հետաքննությունը: Բացահայտվել են *Սպիտակ տան* պաշտոնյաների բազմաթիվ օրինախախտումներ (կաշառք, սպառնալիք, կեղծ վկայություն ևն): Նախագահ Ռ. *Նիքսոնը* «Ու. գ.»-ին մասնակցության և պատասխանատվության ենթարկվելու սպառնալիքի համար 1974-ի օգոստ-ին հրաժարական է տվել:

ՈՒՈԹՍՈՆ (Watson) Ջեյմս Դյուի (ծ. 1928), ամերիկացի կենսաբան: ՌԳԱ արտ. անդամ (1988): 1953-ին Ֆ. *Քրիկի* հետ առաջարկել է ԴՆԹ-ի տարած. կառուցվածքի՝ կրկնակի պարույրի մոդելը: Նոբելյան մրց. (1962, Ֆ. Քրիկի և Մ. *Ուիլկինսի* հետ):

ՈՒՈԹՍՈՆ–ՔՐԻԿԻ ՎԱՐԿԱԾ (մոդել), ամերիկացի կենսաքիմիկոս Ջ. *Ուոթսոնի* և կենսաֆիզիկոս Ֆ. *Քրիկի* առաջարկած՝ ԴՆԹ-ի կառուցվածք.՝ այսպես կոչված՝ կրկնակի պարույրի մոդելը, որը բացատրում է, թե ինչպես կարող է գենետիկ. տեղեկույթը գրանցվել ԴՆԹ-ի մոլ-ներում, և հնարավորություն է տվել նաև ենթադրություն անելու այդ մոլ-ների քիմ. վերարտադր-յան վերաբերյալ: Վարկածը խթանել է փորձարար. և տես. աշխ-ները, նպաստել մոլ. կենսբ-յան բուռն զարգացմանը:

ՈՒՈԼԴ (Wald) Ջորջ (1906–1997), ամերիկացի կենսաքիմիկոս: Հետազոտել է տեսողության կենսըմթացի քիմ. հիմունքները, հաստատել *ռոդոպսինի* քայքայման ուղին (գունաթափման էությունը): Նոբելյան մրց. (1967, Ռ. *Գրանիտի* և Հ. *Հարթլայնի* հետ):

ՈՒՈԼԹՈՆ (Walton) Էռնեստ Թոմաս Սինթոն (1903–1995), հոլանդացի ֆիզիկոս:

Ստեղծել է (1932, Զ. *Քոքրոֆթի* հետ) պրոտոնների առաջին արագացուցիչը (կասկադ. գեներատոր) և արհեստականորեն արագացված պրոտոններով իրականացրել առաջին միջուկ. ռեակցիան: Նոբելյան մրց. (1951, Զ. Քոքրոֆթի հետ):

«ՈՒՈԼԼ ՍԹՐԻԹ ՋԸՈՒՆԸԼ» («The Wall Street Journal» – «Ուոլլ Սթրիթի հանդես»), հաս–քաղ., տնտ. օրաթերթ (1889–ից, Նյու Յորք):

ՈՒՈԼԼԵՍ (Wallace) Ալֆրեդ Ռասել (1823–1913), անգլիացի բնախույզ, կենդանաաշխարհագրության հիմնադիրներից: Մալայան կղզեխմբի բուս. և կենդ. աշխարհների հետազոտությունների սեփ. նյութի վրա առաջարկել է (Չ. Դարվինի հետ միաժամանակ) բնական ընտրության տեսությունը:

ՈՒՈԼԼԵՍ Ուիլյամ (մոտ 1270–1305), շոտլանդացի ժողդ–ի Ազգ. հերոս Անգլիայից անկախության համար պայքարում: Զախջախելով Անգլիայի թագավոր Էդուարդ I–ի բանակը (1297)՝ մի քանի ամիս փաստորեն եղել է Շոտլանդիայի տիրակալը: 1305–ին անգլիացիները գերել և մահապատժի են ենթարկել:

ՈՒՈԼՊՈԼ (Walpole) Ռոբերտ (1676–1745), Մեծ Բրիտանիայի վարչապետ՝ 1741–42–ին: Վիգերի առաջնորդ: Չգտել է համատեղել լենդլորդերի և բուրժուազիայի շահերը:

ՈՒՈԼՍԻ (Wolsey) Թոմաս (մոտ 1473–1530), Անգլիայի թագավորության կանցլեր՝ 1515–29–ին: Յորքի արք. (1517–ից), կարդինալ (1515–ից): Ուժեղացրել է պետ. կառավարման կենտրոնացումը: Կորցրել է Հենրի VIII–ի համակրանքը, 1530–ին մեղադրվել է պետ. դավաճանության մեջ. մահացել է նախքան դատավարությունը:

ՈՒՈԼՓՈԼ (Walpole) Հորաս (1717–1797), անգլիացի գրող: Գոթական վեպի սկզբնավորողը: Հեղինակ է «Օտրանտո դղյակը» (1765) վեպի, «Խորհրդավոր մայրը» (1768) ողբերգության, նաև նամակների: Շարտյան մեջ ջատագովել է գոթ. ոճը:

ՈՒՈԼՔՈՏ (Walcott) Դերեկ (1930–2017), տրինիդադցի անգլիագիր բանաստեղծ, դրամատուրգ: Հեղինակ է «Նավաբեկությունից տուժածը» (1965), «Ամռան կեսին» (1984), «Անառակը» (2004), «Սպիտակ ձկնկուլներ» (2010) և բանաստեղծությունների ու պոեմների այլ ժող–ների, «Նոր Հոմերոս» (1990) պոեմի, «Ախրի Քրիստոֆ» (1950) պատմ., «Երազ կապիկի լեռան վրա» (1968), «Օ՛, Բաբելոն» (1976) և այլ պիեսների: Նոբելյան մրց. (1992):

ՈՒՈՌԵՆ (Warren) Ռոբերտ Փեն (1905–1989), ամերիկացի գրող, գրականագետ: Հեղինակ է «Արքայական ողջ զորախումբը» (1946) փիլ–հոգեբ., «Քարանձավ» (1959), «Արի կանաչ հովիտ» (1971), «Ապաստան» (1977) և այլ վեպերի, «Ինել երկրի վրա: Բանաստեղծություններ. 1977–1980 թթ.» (1980) ժող–ի, «Ժողովրդավարություն և պոեզիա» (1975) մշակութաբան. աշխ–յան:

ՈՒՈՐԴ (Ward) Լեսթեր Ֆրանկ (1841–1913), ամերիկացի սոցիոլոգ: «Սոցիոլոգիայի հայրը» ԱՄՆ–ում: Ըստ Ու–ի՝ պատմ. զարգացման գլխ. շարժիչ ուժը բանականությունն է, իսկ կաստաները, դասերը, պետությունն ու իրավունքը ծագում են ռասաների պայքարից: Ու. պաշտպանել է ռասաների, դասերի և սեռերի հավասարությունը, խստորեն քննադատել է կրոնը, միևնույն ժամանակ եղել է մարքսիզմի հակառակորդներից: Առաջ է քաշել «սոցիոկրատիայի»՝ սոցիալ. ուժերի գիտ. վերահսկողության գաղափարը, որը կապիտալիզմը վերածում է «համընդհանուր բարեկեցության հասարակության»:

ՈՒՈՐԴԵՆ (Worden) Ալֆրեդ (ծ. 1932), ամերիկացի աստղագնաց: ՌՕՄԻ պաշտոնաթող գնդ.: Թռել է Լուսնի շուրջը «Ապոլոն–15» տիեզերանավով (1971–ի հունիս–օգոստ.):

ՈՒՈՔԵՐ (Walker) Ջոն (ծ. 1941), անգլիացի կենսաքիմիկոս: Աշխ–ները վերաբերում են սպիտակուցների քիմիային: Ռենտգենակառուցվածք. վերլուծության (մեծ ճշգրտությամբ) օգնությամբ հաստատել է պրոտոն–փոխադրող ադենոզին եռֆոսֆատազ ֆերմենտի (H+ԱՏ – ֆազ) լրիվ տարած. կառուցվածքը: Նոբելյան մրց. (1997, Պ. Բոյերի հետ):

ՈՒՈՔԵՐ Քրիստոֆեր Ջոզեֆ (ծ. 1942), անգլիացի պատմաբան: Դ. *Լանգի* հետ հրատարակել է «Հայերը» (1976, հայ. հրտ.՝ 1992) գրքույկը: Հեղինակ է «Հայաստան. ազգի վերապրումը» (1980) աշխ–յան՝ նվիրված Հայկ. հարցում եվրոպ. տերությունների վարած քաղ–յանը, հայերի ցեղասպանության խնդիրներին և այլ հարցերի: 2–րդ հրտ–յան (1990) մեջ լուսաբանել է նաև Լ.Ղ–ի պատմությունն ու հիմնախնդիրը:

ՈՒՉՉԵԼԼՈ (Uccello, դի Դոնո) Պաոլո (1397–1475), իտալացի գեղանկարիչ: *Ֆլորենցիայի դպրոցի* ներկայացուցիչ: Գործերից են «Ճակատամարտ Սան Ռոմանոյի մոտ», «Սր Գևորգի մենամարտը վիշապի հետ» (երկուսն էլ՝ 1450–ական թթ.) նկ:


ՈՒՊԱՆԻՇԱԴՆԵՐ [սանսկրիտ՝ ուպանի–շադ – բառացի՝ կողքին (ուսուցչի) նստելը, այստեղից էլ հետագայում՝ նվիրական գիտելիք, գաղտնի ուսմունք], հնդ. հնագույն կրոնափիլ. բնույթի գրավոր տեքստեր: Ու. Բրահմանների, Սամհիտների և Արանյակների հետ կազմում են *Վեդաները* և վերջինների փիլ–յան մասն են: Հնդկաստանի բոլոր ուղղադավան (վեդաների հեղինակությունն ընդունող) կրոնափիլ. համակարգերի հիմքն են: Շուրջ 200 Ու–ից մոտ 10–ը համարվում են գլխավոր: Դրանք տարբերվում են ծավալով, առաջացման ժամանակով (մ. թ. ա. VI–III դդ–ից մինչև XIV–XV դդ.), փիլ. հարցերի մեկնաբանություններով: Ու–ի կենտրոնում բրահմանի և աթմանի նույնության մասին ուսմունքն է:

ՈՒՊԻՏ (Upīts) Անդրեյս (1877–1970), լատիշ գրող, դրամատուրգ: Լատվ. ԽՍՀ ժող. գրող (1943), ԳԱ ակադ. (1846): Սոց. աշխ. հերոս (1967): 1940–51–ին՝ Լատվ. ԽՍՀ ԳԽ փոխնախագահ: Հեղինակ է «Ռոբեժնիկները» (1908–21) եռերգության, «Դարերի սահմանագծին» (1937–40) պատմ. քառերգության, «Կանաչ երկիր» (1945) և «Լուսաշերտ ամպերի մեջ» (1951) երկերգության, նաև պատմվածքների ժող–ների, պիեսների, աշխ–ների: Հայ. հրատարակվել են «Զամշելո գյուղի տղաները» (1966) պատմվածքների, «Նովելներ» (1977) ժող–ները: ԽՍՀՄ (1946), Լատվ. ԽՍՀ (1957) Պետ. մրց–ներ:


ՈՒՌԵՆԻ (Sulix), ուռազգիների ընտանիքի տերևաթափ ծառերի և թփերի ցեղ: Հայտնի է մոտ 350 տեսակ՝ Եվրասիայի, Ամերիկայի բարեխառն գոտիներում, ՀՀ–ում՝ 10՝ գրեթե բոլոր մարզերում: Շատ տեսակներ գեղազարդիչ են: Ծառայում են նաև ավազների, ձորափերի ամրացման համար: Փայտանյութն օգտագործում են մանր շինվածքների, ցյուղերը՝ կողովներ ու զամբյուղներ պատրաստելու համար:

ՈՒՌՈՒՑ, գետ ՀՀ Լոռու մարզում, Զորագետի ձախ վտակը: Սկիզբ է առնում Վիրահայոց լ–շղթայի կենտր. մասի հվ. լանջերից՝ 1700 *մ* բարձր–ից: Երկ.՝ 22 *կմ*, ավազանը՝ 148 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 1,07 *մ*^{3}/*վ*: Հոսում է Լոռու դաշտով, առաջացնում 6 *կմ* երկ–յան և 20–80 *մ* լայն–յան կանիոն: Սնումը ձնաանձրևային է, վարարումը՝ գարնանը: Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով:

ՈՒՌՈՒՑԻԿ ՄԱՐՄԻՆ, երկրչփ. մարմին, որի 2 կետերը միացնող հատվածն ամբողջությամբ գտնվում է նրա մեջ (նկ., օր.՝ a մարմինն ուռուցիկ է, բ մարմինը՝ ոչ ուռուցիկ): Գունդը, քառակուսին Ու. մ–ի օրինակներ են: Ու. մ–ի սահմանի ցանկացած կապակցված մասն անվանում են **ուռուցիկ մակերևույթ**:



ՈՒՌՈՒՑԻԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, y = f (x) ֆունկցիայի (կորի) հատկություն, որի համաձայն՝ յուրաքանչյուր աղեղ բարձր չէ (ուռուցիկություն ներքևում կամ գոգավորություն վերևում, նկ. ա) կամ ցածր չէ (գոգավորություն ներքևում կամ ուռուցիկություն վերևում, նկ. բ) իր լարից:



ՈՒՌՈՒՑՔ, **նորագոյացություն**, **բլաստոմա**, հյուսվածքների ախտաբան. ավելցուկ. տարաճումներ՝ կազմված որակապես փոփոխված, տարբերակումը կորցրած բջիջներից: Ի տարբերություն մնասվածքի, բորբոքումների ևնի ժամանակ առաջացած ուռածության («կեղծ» Ու.)՝ իսկական Ու–ներն աճում են ձևափոխված (ուռուցք. ձևափոխություն) բջիջների բազմացման հաշվին: Առանձնացնում են Ու–ների առաջացմանը նպաստող գործոնների 3 հիմն. խմբեր՝ իոնացնող ճառագայթներ, քաղցկեղածին նյութեր և քաղցկեղածին վիրուսներ: Կլինիկ. և ձևաբան. տեսակետից տարբերում են **բարորակ** (շրջապատող հյուսվածքների մեջ չեն թափանցում, ճյուղավորումներ չեն առաջացնում) և **չարորակ** Ու–ներ: Բուժումը՝ վիրաբուժ., ճառագայթ., հակաուռուցք. դեղանյութ. պատրաստուկներ, նաև այդ մեթոդների տարբեր զուգորդումներ: Ու–ների ուսումնասիրությամբ զբաղվում է ***ուռուցքաբանությունը***:

ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ Բարդուղիմեոս Ֆանարջյանի անվան, հիմնադրվել է 1946–ին Երևանում (մինչև 1985–ը՝ Ռենտգենաբանության և ուռուցքաբանության ԳՀԻ): Կենտրոնում մշակում են չարորակ նորագոյացությունների ու բժշկ. ճառագայթաբանության գիտ. հիմունքները, չարորակ նորագոյացությունների համամարակաբանության, ախտածնության, ուռուցքների վիրուսաբանության և իմունաբանության, ուռուցք. հիվանդությունների կլինիկայի, ախտորոշման, վիրաբուժութ–

յան և համալիր-զուգակցված բուժման հարցեր, նաև Հայաստանում ուռուցքաբան. ծառայության կազմակերպումն ու մեթոդ. ղեկավարումը: Ու. ա. կ. ուռուցքաբանության և ռենտգեն. ախտորոշման բնագավառներում մասնագետներ պատրաստելու հենակետ է: Կենտրոնում են ԵՊՀ և ԱԱԻ ուռուցքաբանության ամբիոնները: Տնօրեններ՝ Բ. Ֆանարջյան (հիմնադիր), Լևոն Մկրտչյան, Վալերիկ Բարսեղյան, Հայրապետ Գալստյան, Արմեն Տանանյան (2014–ից):

ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **օնկոլոգիա** (< հուն. onkos – ուռուցք և ...*լոգիա*), գիտ-յուն. ուսումնասիրում է մարդու, կենդանիների և բույսերի մոտ ուռուցքածնության տես., փորձարար. և կլինիկ. տեսակետները, մշակում ախտորոշման, բուժման և կանխարգելման մեթոդներ: Ձևավորվել է XX դ-ում՝ փորձարար. բժշկության նվաճումների հիմքի վրա: Փորձարար. (սկսած ռուս. գիտնական Մ. Ա. Նովինսկու աշխ-ներից, 1876) և տես. Ու-յան մեջ ձևավորել են 3 հիմն. ուղղություններ՝ կախված առաջացնող ազդակից՝ վիրուս. (ֆրանսիացի Ա. Բորել, 1903, ամերիկացի Ֆ. Ռոուս, 1911), քիմ. (ճապոնացի Կ. Յամագիվա և Կ. Իտիկավա, 1915) և ճառագայթ. (ֆրանսիացի Ա. Լավասան, 1932, ևն): Ռուս. գիտնական Է. Ձիլբերն ստեղծել է ուռուցքների վիրուսագենետիկ. տեսությունը: Կլինիկ. Ու-յան արագ զարգացումը կապված է վիրաբուժության, ճառագայթաբանության, քիմիաբուժության, իմունաբանության հետ: ՀՀ-ում Ու-յան զարգացումը պայմանավորված է Բ. Ֆանարջյանի և Վ. Արգարովի աշխ-ներով: 1946-ին հիմնվել է Ռենտգենաբանության և Ու-յան ԳՀԻ (1971-ից՝ Բ. Ֆանարջյանի անվ., 1985-ից՝ Ու-յան կենտրոն, 1996-ից՝ ազգ.): Ինստ-ում ուսումնասիրվել են չարորակ ուռուցքների համաճարակաբանության և պատճառագիտ-յան, ուռուցք. հիվանդությունների կլինիկայի, ախտորոշման ու բուժման ժամանակակից և համակցված մեթոդների մշակման հարցեր:

ՈՒՌՈՒՑԱԳԵՆԵՐ, **օնկոգեններ** (< հուն. onkos – ուռուցք և ***գեներ***), գեներ, որոնք պայմանավորում են ուռուցքածնությունը (**օնկոգենեզ**)՝ բնականոն բջիջների փոխակերպումը չարորակայինի: Ու. կան ուռուցքածին ԴՆԹ պարունակող որոշ վիրուսների և ռետրովիրուսների, նաև ուռուցք. բջիջների գենոմներում: Ու-ի նախորդներ են նախաուռուցքագենները, որոնք հայտնաբերվել են ողնաշարավորների և մի շարք անողնաշարների բոլոր դասերում: Ու-ի գործունեությունն իրականանում է նրանցով կոդավորվող ուռուցք. սպիտակուցներով:

ՈՒՌՈՒՑՔԱԾՆՈՒԹՅՈՒՆ, **օնկոգենեզ** (< հուն. onkos – ուռուցք և ...***գենեզ***), **բլաստոմոգենեզ**, **կանցերոգենեզ**, բնականոն բջիջների հյուսվածքներն ուռուցք. բջիջների փոխակերպման ընթացքը: Ներառում է նախաուռուցք. մի շարք փուլեր (նախաքաղցկեղ) և ավարտվում ուռուցքայինի փոխակերպումով:

ՈՒՄԱՅ, **Հուսեյ** (Houssay), Բեռնարդո Ալբերտո (1887–1971), արգենտինացի ֆիզիոլոգ: Բացահայտել է հիպոֆիզի հորմոնների դերն ածխաջրերի փոխանակման կարգավորման մեջ, մասնավորապես՝ շաքարախտի զարգացման դեպքում: Նոբելյան մրց. (1947):

ՈՒՄԱՅԻՆ ՀՈԴ (լատ.՝ articulatio humeri), պարզ գնդաձև հոդ՝ բազկոսկրի գլխիկի և թիակոսկրի տանձաձև հոդափոսի միջև: Հոդն ունի բարակ և ընդարձակ հոդաշապիկ, որը նպաստում է հոդում կատարվող լայնածավալ շարժումներին: Հոդում չկան ամրապնդող կապաններ, ուստի հաճախ տեղի են ունենում հոդախախտումներ:

«ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ», գիտ. ժող. (1940–76, Երևան՝ բնագիտ. և հասարակագիտ. պր-ներ): ԵՊՀ ուսանող. գիտ. ընկ-յան պաշտոն. հրտ-յուն (1947–ից):

ՈՒՄԱՉԵՎ, Յուրի Վլադիմիրովիչ (ծ. 1957), ՌԴ տիեզերագնաց օդաչու, ՌԴ հերոս (1994): Կատարել է 4 տիեզ. թռիչք (1994, 1996, 2000, 2001)՝ որպես արշավախմբի ճարտարագետ և հրամ. (թռիչքի ընդհ. ժամանակը՝ 552 օր 22 *ժ* 24 *ր*): 7 անգամ դուրս է եկել բաց տիեզերք (2-րդ թռիչքի ժամանակ՝ 6, 4-րդի՝ 1 անգամ)՝ 30 *ժ* 49 *ր* ընդհ. տևողությամբ:

ՈՒՄԱՏՈՎԱ Նինա Նիկոլաևնա (ծ. 1951), ռուս դերասանուհի: ՌԴ ժող. արտիստ (1994): 1989–ից՝ Գ. Ա. Տովստոնոգովի անվ. դրամատիկ. մեծ թատրոնի դերասանուհի: Խաղացել է Ս. Ի. Ձլոտնիկովի «Ծերուկը հեռացել է պառավից», Ֆ. Շիլլերի «Խարդավանք և սեր», Ա. Մ. Վոլոդինի «Մենախոսություններ» և այլ ներկայացումներում, նկարահանվել «Հիսուներեքի ցուրտ ամառը», «Անեկդոտներ», «Տեսնել Փարիզն ու մեռնել», «Ձիչա», «Պատուհան դեպի Փարիզ», «Կղզին» և այլ ֆիլմերում: ՌԴ Պետ. մրց. (2000):

ՈՒՄՈՏԱՆԻՆԵՐ, **բրախիոպոդներ** (Brachiopoda), շոշափուկավորների տիպի ծով. անողնաշարների դաս: Սարմինը ծածկված է երկփեղկ խեցիով (երկ.՝ մինչև 8 *սմ*): Յողունիկը ծառայում է գրունտին ամրանալու համար: Հայտնի են 280 ժամանակակից և մոտ 10 հզ. բրածո տեսակներ: Հնակենդանաշրջանի ուղեցույց բրածոներ են:

ՈՒՄՊԵՆՄԿԻ Էդուարդ Նիկոլաևիչ (ծ. 1937), ռուս գրող: Հեղինակ է մանկ. «Կոկորդիլոս Գենան և իր ընկերները» (1966, հայ.՝ «Կոկորդիլոս Գենան և ուրիշ հեքիաթներ», 1996, շարունակությունը՝ «Ձերուրաշկան և իր ընկերները», 1970, «Կոկորդիլոս Գենայի արձակուրդը», 1974, ևն), «Կախարդական գետի հոսանքով ներքև» (1972), «Քեռի Ֆեդորը, շունը և կատուն» (1974, հայ.՝ 1978), «Երաշխիքային մարդուկներ» (1975), «Լավ երեխայի տարի» (2008) և այլ հեքիաթ-վիպակների, նաև բանաստեղծությունների, պիեսների:

ՈՒՄՊԵՆՄԿԻ Ֆեոդոր Իվանովիչ (1845–1928), ռուս պատմաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1900): 1894–1914-ին՝ Կոնստանդնուպոլսի Ռուս. հնագիտ. ինստ-ի տնօրեն: Հիմն. աշխ-ը՝ «Բյուզանդական կայսրության պատմությունը»:

ՈՒՄՊԵՆՄԿԻ ՏԱՃԱՐ, **Վերափոխման տաճար**, ճարտ. հուշարձան ՌԴ Վլադիմիր ք-ում, կառուցվել է 1158–60-ին, վերակառուցվել 1185–89-ին (6 աշտարակ, հնգանավ, եռախորան, հնգագմբեթ): Պահպանվել են XII–XIII դդ-ի, նաև 1408-ի որմնանկարների (Անդրեյ Ռուբլյով, Դանիիլ Չյոռնի) հատվածներ: Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՈՒՄՏԻՆՈՎ, Դմիտրի Ֆեոդորովիչ (1908–1984), խորհրդ. պետ. և ռազմ. գործիչ: ԽՄ մարշալ (1976): Սոց. աշխ. հերոս (1942, 1961): ԽՄ հերոս (1978): 1941–53-ին՝ ԽՍՀՄ սպառազինության ժողկոմ, նախարար, 1953–57-ին՝ ԽՍՀՄ պաշտպ-յան արդ-յան նախարար: 1965–76-ին՝ ԽՄԿԿ ԿԿ քաղբյուրոյի անդամության թեկնածու, ԽՄԿԿ ԿԿ քարտուղար, 1976-ից՝ քաղբյուրոյի անդամ, ԽՍՀՄ ՊՆ նախարար: ԽՍՀՄ Պետ. (1953, 1983), Լենինյան (1982) մրց-ներ:

ՈՒՄՏԻՆՈՎ (Ustinow) Փիթեր (1921–2004), անգլիացի գրող, դերասան, ռեժ., պրոդյուսեր: Հեղինակ է պիեսների («Ռոմանովը և Ջուլիետը», 1957, «Գազաթ տանող կես ճանապարհին», բեմ.՝ 1967, «Բեթհովենի տասներորդը», 1985, ևն, մեծ մասն էկրանավորվել է), «Կրամնեզել» (1971) վեպի: Նկարահանվել է «Գաղտնի ծառայության դպրոց» (1946), «Բիլլի Բադ» (1962), «Համմերսմիթը ազատության մեջ» (1972) և այլ ֆիլմեր, նկարահանվել «Մպարտակ», «Մահ Նիլում», «Ձարիք արևի տակ», «Ձարչարանքներ ըստ Լյութերի» և այլ կինոնկարներում, բեմադրել Ս. Ս. Պրոկոֆևի «Մեր առ երեք նարինջ» օպերան (1997, Մոսկվայի Մեծ թատրոն):

«Օսկար» մրց. (1961, 1965):

ՈՒՄՏԻՆՈՎԱ Տատյանա Ալեքսեևնա (1908/09–1999), ռուս. բալետմայստեր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1961): 1938-ից՝ Մոսկվայի Մ. Ե. Պյատնիցկու անվ. ռուս. ժող. երգչախմբի բալետմայստեր: Ձարգացրել է ռուս. ժող. պարարվ-ի ավանդույթները: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949, 1952):

«ՈՒՄՄՈՒՄ՝ ՆԱՄԱԼԸ», քաղ., առևտր., գր. կիսամսյա թերթ (1849–53, Սինգապուր՝ գրաբար): Խմբ-հրտ.՝ Գրիգոր Գալստանյան:

«ՈՒՄՄՈՒՄ՝ ՆԱՐԱՆ», դպրոց. ամսագիր (1932–43, Պլովդիվ): Պլովդիվի Մխիթարյան վարժարանի հրտ-յուն: Խմբ-ներ՝ Մկրտիչ Կարապետյան, Գրիգոր Հեպոյան, Հ. Եղիայան, Համազասպ Ոսկյան: Կ. Պոլսի համանուն ամսաթերթի (1911–15) շարունակությունը:

ՈՒՎԱՐՈՎ Ալեքսեյ Սերգեևիչ (1825–1884/85), ռուս հնագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. (1856), պատվ. (1857) անդամ: Ռուսաստանի և Մոսկվայի հնագիտ. ընկերների, Պատմության թանգարանի (Մոսկվա) հիմնադիրներից: 1880-ի աշնանն ուսումնասիրություններ է կատարել Արմավիրում, որի որոշ կառույցներ համադրել է Գառնիի ամրոցի ու տաճարի, ինչպես նաև հայկ. վաղմիջնադար. մի շարք հուշարձանների հետ:

ՈՒՎԵՋՅԱՆ Ավո (1926–2017), ջազ. դաշնակահար: 1942-ին Լիբանանում հիմնադրել է ջազ. խումբ: 1940-ական թթ-ի կեսերից՝ ԱՄՆ-ում: Հեղինակ է «Strangers in the night» (ընդգրկվել է Ֆրենկ Սինատրայի երգացանկում) երգի: Հանդես է եկել Ռեյ Չառլզի, Ջեյմս Բրաունի և ուր. հետ: Արտադրել է «Ավո Մադուրո» (2000) սիգարները, համագործակցել՝ «Դավիդոֆ» ընկ-յան հետ:

ՈՒՏԱՄԱՐՈ Կիտագավա (1753–1806), գունավոր փայտափորագրության ճապոնացի վարպետ, գեղանկարիչ: Կանանց դիմանկարներում և նրբագեղ-բանաստեղծ. կերպարներում օգտագործել է փայլարի փոշին՝ ստեղծելով արծաթագույն առկայծող ֆոն («Մեծ գլուխներ», շարք 1790):

ՈՒՏԱՐ ՊՐԱԴԵՇ, նինգ Հնդկաստանի հվ-ում: Տարածքը՝ 294 հզ. *կմ*², բն.՝ 199,6 մլն (2011): Վարչ. կենտրոնը՝ Լաքհնաու: Այս նինգ-ում է Ագրա ք., որտեղ գտնվում է հայտնի Թաջ Մահալը: Կան XI–XVI դդ-ի

կառույցներ (եկեղեցիներ և տաճար, վանքեր և բնակելի տներ):

ՈՒՏԻ ԱՌԱՆՁՆԱԿ, *Ուտռուստակ*, գվո *Ուտիք*՝նահզ–ում՝ Տրտու (Թարթաո) գետի ավազանում: Ընդգրկել է Արցախ՝նահզ–ից մինչև Կուր գետն ընկած հարթավայրը: 461–ին գվո–ում հիմնադրվել է *Պարտավ* ք–ը: Հիշատակվում է Կաղաննկատույք գ–ը՝ *Մովսես Կաղանկատվացու* ծննդավայրը:

ՈՒՏԻԼԻՏԱՐԻԶՄ (լատ.՝ utilitas – օգուտ, շահ), 1. օգտապաշտություն, երևույթների գնահատման սկզբունք՝ ըստ դրանց օգտակարության հատկանիշի, որևէ նպատակի ծառայելու միջոց, հնարավորություն: 2. Ի. Բենտամի հիմնադրած բարոյագիտ. սկզբունքը, որն օգուտը համարում է բարոյականության հիմք և մարդկային արարքների չափանիշ: Ու. XIX դ–ում լայնորեն տարածվել է Մեծ Բրիտանիայում:

ՈՒՏԻՆՈՈՒՐԱ, ճապոն. տիեզերական Կյուսյու կղզում Ուտինոուրա ք–ի շրջանում (Կահոսիմա պրեֆեկտուրա): Շահագործման է հանձնվել 1970–ին: Արձակվում են «Տանսեյ», «Շինսեյ», «Պեմպա» և այլ ԵԱՀ–ներ:

ՈՒՏԻՔ, *Ուտի, Ութիացւոց աշխարհ*, նահզ: Զբաղեցրել է Աղստև գետից մինչև Կուրի և Երասխի ջրկիցն ընկած տարածքը: Եղել է *Վանի թագավորության* (Ուրարտու), *Երվանդունիների*, *Արտաշեսյանների* պետությունների կազմում, Արշակունյաց թագավորության ենթակա երկրամաս: Պտղոմեոսի «Աշխարհագրության» վկայությամբ՝ II դ–ում Մեծ Հայքի թագավորության ռազմավար. աշխարհնեբից: Բաղկացած է եղել նախ 7, ապա՝ 8 գվո–ից՝ Առան ոտտ, Տոի, *Ռոտ–պարսյան*, Աղվե (Աղուե), Տուչքատակ (Տուշքատակ), *Գարդման*, *Շակաշեն*, *Ուրի Առանձնակ*: V դ–ի վերջին մտել է *Առանշահիկների* թագավորության մեջ: VIII դ–ի 2–րդ կեսին Ու–ի *Պարտավ* ք–ը դարձել է *Արմինիա* ոստիկանության կենտրոնը: 840–ական–ներին հիմնադրվել է *Գանձակ* ք–ը: Ու–ից սերած մշակույթի երախտավորներից են *Վանական Վարդապետը*, *Կիրակոս Գանձակեցին*, *Վարդան Արևելցին*, *Դավիթ Ալավկա Որդին*, *Միխիթար Գոշը* և ուր.: Նահզ–ի ճարտ. հուշարձաններից են Խոբանաշատի վանքը, Բանանցի Թարգմանչաց վանքը, Չարեքավանքը ևն: XVI դ–ի սկզբին Ու. գրավել է Սեֆյան Պարսկաստանը, XIX դ–ի սկզբներին անցել է Ռուս. կայսրությանը (իրավ. ճանաչում է ստացել 1813–ի *Գյուլիստանի հաշտության պայմանագրով*): XIX դ–ի վերջին և XX դ–ի սկզբին Ու–ի տարածքը ներառվել է հիմնականում Ելիզավետպոլի և մասամբ Բաքվի նահզ–ի մեջ: Տարածքը ներկայում մասամբ՝ ՀՀ, ԼՂՀ, հիմնականում՝ Ադրբեջանի սահմաններում է:

ՈՒՏԿԻՆ Վլադիմիր Ֆեոդորովիչ (1923–2000), հրթիռատիեզ. տեխնիկայի բնագավառի ուկրաինացի գիտնական: ԽՍՀՄ ԳԱ (1984), Ուկրաինայի ԳԱԱ (1976) ակադ.: Սոց. աշխ. հերոս (1969, 1976): Աշխ–ները վերաբերում են մեքենաշինության և նյութերի կառուցվածքի բնագավառին: Լենինյան (1964), ԽՍՀՄ Պետ. (1980) մրց–ներ:

ՈՒՏՅՈՍՈՎ (Վայսբեյն) Լեոնիդ Օսիպովիչ (1895–1982), էստրադայի ռուս. արտիստ: ԽՍՀՄ ժող. արտիստ (1965): 1929–ից՝ «Թեա–ջազ» անսամբլի (հետագայում՝ ՌԻՍՖՍՀ պետ. էստրադ. նվագախումբ) հիմնադիր–ղեկ. և մենակատար: Նկարահանվել է «Ուրախ տղաներ» (1934) ֆիլմում:

ՈՒՏՆԱՊԻՇՏԻՄ (Ուտ–Նապիշտի), Համաշխ. ջրհեղեղի մասին բաբելոնյան առասպելի հերոս: Համապատասխանում է աստվածաշնչ. Նոյին:

ՈՒՏՈՊԻԱ, (հուն.՝ ou – ոչ և topos – տեղ, այսինքն՝ տեղ, որը չկա, այլ վարկածով՝ eu – բարիք և topos, այսինքն՝ օրինված երկիր), իդեալ. հասարակարգի պատկերացումը, գիտ. ֆանտաստիկայի ժանր, որոնց ստեղծագործություններում նկարագրված է իդեալ. հասարակարգը: Եզրույթն առաջացել է Թ. Մորի «Ուտոպիա» (1516) գրքի անվանումից:

ՈՒՏՈՊԻԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄ, իդեալ. հաս–յան մասին գրկ–յան մեջ հաստատված ընդհ. բնորոշում, որը հիմնված է ունեցվածքի ընդհանրության, աշխ–ի պարտավորության, արդարացի բաշխման վրա: «Ու. ս.» հասկացությունն առաջինը կիրառել է Թ. Մորը՝ իր «Ուտոպիա» (1516) աշխ–յան մեջ: Խոշորագույն ներկայացուցիչներն են Թ. Մյունցերը, Տ. Կամպանելան, Ջ. Ուինսթենլին, Կ. Ա. Սեն–Սիմոնը, Շ. Ֆուրյեն, Ռ. Օուենը և ուր.:

ՈՒՏՐԵԽՏ (Utrecht), ք–նվինգստ Նիդեռլանդներում՝ Հռենոս գետի ափին, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 312,6 հզ. (2011):

ՈՒՏՐԵԽՏԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Նիդեռլանդների խոշորագույն համալսարաններից: Հիմնադրվել է 1636–ին: 2015–ին ուներ շուրջ 30 հզ. ուսանող:

ՈՒՐ (շումեր.՝ Ուրիմ), ք. մ. թ. ա. V–IV հզ–ամյակներում՝ Եփրատի ստորին հոսանքում՝ Հվ. Միջագետքում (այժմ՝ Թել Մուքայար՝ Իրաքում): Մինչև մ. թ. ա. III հզ–ամյակը՝ ք–պետություն (Ու–ի 1–ին հարստություն), մ. թ. ա. XXI դ–ում՝ Շումերի և Աքքադի մայրաքաղաքը (Ու–ի 3–րդ հարստություն): Ունեցել է տաճարներ, զիկկուրատներ, 1–ին հարստության գերեզմանատուն, այդ թվում՝ 16 թագավոր. դամբարան, քարե դիմանկներ՝ դրոմոսներով, մարդկային զոհաբերություններ (մինչև 74), անվակառքեր, զենք, ոսկե զարդեր, թանկարժեք իրեր, 3–րդ հարստության պաշտպ. պատեր, նվինգստ, զիկկուրատ, տաճար, դամբարանների պալատ, սեպագիր արխիվ ևն, ինչպես նաև մ. թ. ա. III–II հզ–ամյակների բնակելի թաղամասեր:

ՈՒՐԱԼ, գետ Հվ. Ուրալում և Մերձկասպյան ցածրավայրում (ՌԴ և Ղազախստան): Երկ.՝ 2428 *կմ*, ավազանը՝ 237 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 225 *մ³/վ*: Թափվում է Կասպից ծովը: Նավարկելի է Ուրալսկ ք–ից ներքև: Ափին են Օրսկ, Օրենբուրգ (ՌԴ), Ատիրաու (Ղազախստան) ք–ները:

ՈՒՐԱԼ, տարածք Արլ–եվրոպ. և Արմ–սիբիր. հարթավայրերի միջև: Ու–ում է Ուրալյան լ–համակարգը, որը միջօրեականի ուղղությամբ ձգվում է Կարայի ծովի ափից: Երկ.՝ ավելի քան 2000 *կմ*, լայն.՝ 40–150 *կմ*: Բարձր.՝ մինչև 1895 *մ* (Նարոդնայա լ.): Կազմված է գլխ. ջրբաժան և մի քանի կող. լ–շղթաներից, որոնք միմյանցից բաժանված են ընդարձակ ցածրություններով: Բաժանվում է Բևեռ., Մերձբևեռ., Հս., Միջին և Հվ. Ու–ների: Հարուստ է մետաղ. (պղինձ, երկաթ, ոսկի ևն) օգտ. հանածոներով:

ՈՒՐԱԼՅԱՆ ՌԱՄՄ, անցումային է մոնղոլոիդ և եվրոպեոիդ ռասաների միջև: Բնորոշ են ուղիղ, մուգ մազերը, մուգ աչքերը, նեղ երեսը, զարգացած երրորդական մազածածկույթը, նեղ քիթը: Տարածված է Արմ. Սիբիրում (խանտեր, մանսիներ, հս. ալթայցիներ ևն):

«ՈՒՐԱԽ ԳՆԱՑՔ», մանկ. ճանաչող., ժամանց. ամսագիր (2009–ից, Երևան): *«Էդիթ Պրինտ»*–ի հրտ–յուն: Խմբ.՝ Դավիթ Գյուրջինյան:

ՈՒՐԱՆ (Uranum), U, տարրերի պարբեր. համակարգի III խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 92, ա. զ.՝ 238, 02891, ակտինիդ է: Ճառագայթաակտիվ է, առավել կայուն իզոտոպը՝ ^{238}U ($T_{1/2}$ = 4,47 · 10^9 տարի): Կոչվել է Ուրան մոլորակի անունով: Արծաթասպիտակավուն մետաղ է, խտ.՝ 19,12 *գ/սմ³*, $t_{հալ.}$՝ 1135°C: Քիմիապես ակտիվ է (փոշենման Ու. տաքացնելիս բռնկվում է): Միներալներն են ուրանինտը, ուրանային թերթաքարերը: Բնական Ու. բաղկացած է 3 իզոտոպից՝ ^{238}U (99,275 %), ^{235}U (0,720 %) և ^{234}U (0,005 %): Ու. միջուկ. վառելիք է, նրանից ստանում են պլուտոնիումի իզոտոպը՝ ^{239}Pu:

ՈՒՐԱՆԻ ՀԱՆՔԱՆՅՈՒԹԵՐ, ուրան և նրա միացությունները պարունակող բնական միներալային գոյացություններ, որոնց արդյունավետ օգտագործումը տեխնիկապես հնարավոր է, տնտեսապես՝ շահավետ: Հայտնի են շուրջ 100 միներալ, որոնցից գործն. նշանակություն ունեն 12–ը: Ու. ի–ի պաշարներով հարուստ են Ավստրալիան, Կանադան, ԱՄՆ–ն, Ղազախստանը, Ֆրանսիան, ՀԱՀ–ը, Գաբոնը ևն:

ՈՒՐԱՆՈՍ, երկնքի աստվածը հուն. դից–յան մեջ: *Գեայի* (Երկրի) ամուսինը, *տիտանների*, *կիկլոպների* և հարյուրձեռքանի հսկաների հայրը: Ու–ին գահընկեց է արել որդին՝ *Քրոնոսը*:

ՈՒՐԱՄԱՐ, Բազումի լ–շղթայի ամենաբարձր լ–գագաթը (2992 *մ*) ՀՀ Լոռու մարզում: Լանդշաֆտը լ–մարգագետնային է: Ամառ. արոտավայր է:

ՈՒՐԱՐՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, արևելագիտ–յան ուրույն գիտաճյուղ. ուսումնասիրում է *Վանի թագավորության* (Ուրարտու) պատմությունը, մշակույթը և արքունի դպրանոցում օգտագործվող սեպագիր արձանագրությունների լեզուն: Ձևավորվել է XIX դ–ում՝ եվրոպացի արևելագետների ջանքերով: 1827–ին Ֆ. Ե. Շուլցը (Արմ. Հայաստան էր գործուղել Ֆրանսիայի Ասիական ընկ–ը) հայտնաբերել ու ընդօրինակել է 42 սեպագիր արձանագրություն, նկարագրել մի քանի հնագիտ. հուշարձաններ: Արգասավոր են եղել Սբ Էջմիածնի միաբան Մեսրոպ *Մաշտոցյանցի* որոնումները (1860–70–ական թթ.) Արլ. Հայաստանում: Ու–յան զարգացման գործում կարևոր ավանդ ունեն նաև Ս. Գյուլարը, Ա. Հ. Սեյսը, Մ. Վ. *Նիկոլսկին*, Կ. Ֆ. *Լեհման–Հաուպտը*, Վ. Բելքը, Հովսեփ *Օրբելին*, Ն. *Մառը*, Ներսես *Մարգիսյանը*, Հ. Սանտալճյանը, Գրիգոր *Ղափանցյանը*, Գևորգ *Ջահուկյանը*, Ի. Մ. *Դյակոնովը*, Բ. Բ. *Պիոտրովսկին*, Գ. Ա. Մելիքիշվիլին, Հարություն *Մարտիրոսյանը* և ուր.:

Ուրարտ. հնագիտ. նյութերի հավաքածուներ կան ՀՊՊԹ–ում, Էրեբունի, Ս. Պետերբուրգի էրմիտաժ, Վրաստանի պատմության, Բրիտ. և Բեռլինի թանգարաններում:


ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, *Վանի թագավորության* (Ուրարտու)

շուրջ 600 *ուրարտերեն* և սակավաթիվ աքքադ. սեպագիր արձանագրություններ: Մեծագույնն Արգիշտի Ա-ի՝ Վանում հայտնաբերված *Խորխոռյան արարեգրությունն* է:

ՈՒՐԱՐՏԵՐԵՆ, խալդերեն, ուրարտ. *ուսպագիր* արձանագրություններում վկայված մեռած լեզու, խուռիերենի մերձ. ազգակիցը: Ըստ տարածված վարկածի՝ ունի հս-արևելակովկաս. ծագում (Ի. Մ. Դյակոնով, Ս. Ա. Ստարոստին), ըստ Գ. Ջահուկյանի՝ պատկանում է լեզուների նոստրատիկ գերընտանիքին:

ՈՒՐԱՐՏՈՒ Այծեմիկ Համազասպի (Տեր-Խաչատրյան, 1899–1974), քանդ.: ՀԽՍՀ ժող. նկարիչ (1960): Աշոտ *Հովհաննիսյանի* կինը: Հեղինակ է հաստոց., մոնումենտալ-դեկորատիվ քանդակների («Պատանին», 1930, «Սասունցի Դավիթ», 1935, «Անուշ», 1938, «Ալմաստ», 1937, «Կժով աղջիկը», 1939, ևն), Մովսես Խորենացու արձանի (1962, բրոնզ, Մոնդ-ի առջև): Զարգացրել է դիմաքանդակի ժանրը («Զութակահար Ա. Գաբրիելյան», 1943, «Ակադեմիկոս Ա. Հովհաննիսյան», 1948, ևն):

ՈՒՐԱՑԻԼ, պիրիմիդինային հիմք է: Պարունակվում է բոլոր կենդանի օրգանիզմների նուկլեոտիդների և ՌՆԹ-ի բաղադրության մեջ: Գենետիկ. կոդի 4 տարրերից մեկն է (ՌՆԹ-ում Ու-ի փոխարեն թիմինն է):



ՈՒՐԲԱԹԱԳԻՐՔ, հայ. առաջին տպագիր գիրքը (1512, Վենետիկ): Տպագրիչ՝ *Հակոբ Մեղապարտ*: Անթվակիր է, առանց տպագրության վայրի նշման: Բաղկացած է 124 էջից (62 թերթ), էջերը խորագրերով են՝ զարդ-շրջանակներում, ունի փորագիր 4 պատկեր: Տպագրությունը երկգույն է՝ սև ու կարմիր: Բնագրի վերջում կա խաչաձև տպարանանիշ՝ լատ. D. I. Z. A. տառերով [Dei servus (Աստծու ծառա), Iakobus (Հակոբ), Zanni (Ծաննի՝ Հովհաննես(յան), Armenius (Հայ)]: Ու-ի՝ հայ. առաջին տպագիր գիրք լինելը հիմնավորել է Ռաֆայել *Իշխանյանը* 1964-ին, մինչ այդ սխալմամբ Հակոբ Մեղապարտի տպագրած 5 գրքերից առաջինը համարվել է *Պարզապտումարը*:

ՈՒՐԲԱՆԻԶՄ (լատ.՝ urbanus – քաղաքային), XX դ-ի սկզբին ձևավորված ուղղություն. հիմն. նպատակը մեծ քաղաքների նկարագրությունն ու պատկերումն էր. ըստ էության՝ հակադրվում էր հովվերգությանը և բնապաշտությանը: Հատուկ էր ֆուտուրիզմի, սիմվոլիզմի գր. հոսանքներին և պրոլետկուլտին հարող գրողների երկերին: Ու. ցայտունորեն արտահայտվել է Ու. Ուիթմենի ստեղծագործության մեջ: Ու-ին հարել են նաև Է. Վերհառնը, Ա. Բլոկը, Վ. Յ. Բրյուսովը, Վ. Վ. Մայակովսկին, հայ բանաստեղծներից՝ Դ. Վարուժանը, Վ. Տերյանը, Ե. Չարենցը, Հ. Հակոբյանը և ուր.:

ՈՒՐԲԱՆՈՍ II (Urbanus, մոտ 1042–1099), Հռոմի պապ՝ 1088-ից: 1095-ին հայտարարել է Խաչակիրների 1-ին արշավանքի սկիզբը:

ՈՒՐԲԵՆ (Urbain) Ժորժ (1872–1938), ֆրանսիացի քիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1925): Աշխ-ները վերաբերում են հազվագյուտ տարրերի, կոմպլեքս. միացությունների քիմիային: Հայտնագործել է (1907) *լյուտեցիումը*:

ՈՒՐԴՈՒ, Պակիստանի պետ. լեզուն (անգլ-ի և բենգալ-ի հետ): Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի հնդիրան. ճյուղի նորինդ. խմբին: Գր. լեզուն կազմավորվել է XIV–XVIII դդ-ում:

ՈՒՐԵԱՋ, ֆերմենտ, որը որոշ կենդանիների օրգանիզմներում և բույսերում կատալիզում է միզանյութի հիդրոլիզը՝ մինչև ամոնիակի և ածխածնի երկօքսիդի: Բյուրեղ. վիճակում ստացված (Ջ. Սամներ, 1926) առաջին ֆերմենտն է:

ՈՒՐԹԱՅԻ ԵԿԵՂԵՑԻ, հայկ. ճարտ. հուշարձան Կարսից 60 *կմ* հս՝ Ուրթա բնակավայրում: Եկեղեցին միակտուր քարից 2 շարք 3-ական սյուներով եռանավ բազիլիկ է (XI դ., կանգուն): Հս. սյուները (խոյակների ինքնատիպ քանդակազարդությամբ) գլանաձև են, հվ-ները՝ ութանիստ, արլ. ճակատը մշակված է զույգ հայկ. խորշերով: XVII դ-ում վերակառուցվել է բերդի, ապա վերածվել մզկիթի:

ՈՒՐԻԴԻՆ, նուկլեոզիդ, կազմված է ուրացիլ-պիրիմիդին. հիմքից և ռիբոզ ածխաջրից: Պարունակվում է բոլոր կենդանի օրգանիզմների ՌՆԹ-ում: Կոֆերմենտների կազմում մասնակցում է ածխաջր. փոխանակությանը:

ՈՒՐՆ, **Ուրծաձոր**, գվո *Այրարատ* նհնգում: Համապատասխանում է ՀՀ այժմյան Արարատի մարզի տարածքի մի մասին: Տարածքում էր Խոսրովի անտառը (IV դ.): Առաջին անգամ հիշատակել են Եղիշեն ու Ղազար Փարպեցին (V դ.): Գվո-ի կենտրոն Ուրծաձորը տարբեր ժամանակներում հիշատակվում է որպես գյուղ, ավան կամ գք: XV դ-ում Ու-ի *Սակաբերդը* հիշատակվում է որպես գյուղ՝ Սբ Ստեփանոս եկեղեցով: XIII–XIV դդ-ում գվո-ը պատկանել է Պռոշյան (Խաղբակյան) իշխան. տանը: Պարսկ. տիրապետության ժամանակ կազմել է Երևանի խանության Վեդիբասարի մահալը: 1828-ին Արլ. Հայաստանի կազմում միացել է Ռուս. կայսրությանը:

ՈՒՐԾԱՍԱՐԻ ԼԵՌՆԱՆՑՔ, ՀՀ Ուրծի լ-շղթայում: Բարձր.՝ 1910 *մ*: Շաղափի գոգավորությունը կապում է Արածո դաշտին: Առաջացել է տեկտ. շարժումների հետևանքով:

ՈՒՐՆԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Վեդիի վտակ Շաղափի ու Արածո գետի միջև՝ ՀՀ Արարատի մարզում: Ձգվում է հս-արմ-ից հվ-արլ.: Երկ.՝ 25 *կմ*, բարձր.՝ մինչև 2445 *մ* (Ուրծ լ.): Անհամաչափ է. հս. լանջերը երկար ու մեղմաթեք են, հվ. լանջերը՝ կարճ ու զառիթափ՝ կտրտված խոր սելավաձևերով: Լանդշաֆտը ստորոտում կիսաանապատային է, բարձրադիր գոտում՝ լ-տափաստան.:

ՈՒՐՂԱՆՋՅԱՆ Տիգրան Գառնիկի (1924–1984), նյարդաֆիզիոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (1967): Աշխ-ները վերաբերում են ԿՆՀ-ի վնասված ֆունկցիաների նյարդահումորալ կարգավորմանը, տարիք. և տեսակ. առանձնահատկություններին, ողնուղեղ. շոկի, ենթակեղև. գոյացությունների, նյարդ. համակարգի պլաստիկության խնդիրներին:

ՈՒՐՄԻԱ, Կապուտան, Ռեզայե (1926–79), անհոսք լիճ Հայկ. լ-աշխարհի հվ-արլ-ում: Մակերեսը՝ 5,2–6 հզ. *կմ²*, խոր.՝ մինչև 15 *մ*, երկ.՝ 140 *կմ*, լայն.՝ մինչև 65 *կմ*, ավազանը՝ 50 հզ. *կմ²* (որից 40 հզ. *կմ²*-ը՝ Հայկ. լ-աշխարհում): Գտնվում է տեկտ. իջվածքում՝ 1275 *մ* բարձր-յան վրա: Աղիությունը՝ 150–250 ‰: Ու. թափվող գետերից խոշոր են Սալմաստը, Մարին, Կարմիրջուրը: Լճում կա մոտ 60 կղզի (Արքայից, Չիերի ևն): Կենդանիներից կան միայն խեցգետնանմաններ: Նավարկելի է:

ՈՒՐՄԻԱ, Որմի, Ուռմի, ք. Իրանում՝ *Ուրմիա* լճից արմ., Արմ. Ատրպատականի օստանի վարչ. կենտրոնը: Բն.՝ 680,2 հզ. (2012): Եղել է *Պարսկահայք* նհնգ-ի Թրաբի գվո-ի կենտրոնը: Հայաստանի 387-ի բաժանմամբ անցել է Պարսկաստանին: Հետագայում հաստատվել են այլազգիներ: Խիստ տուժել է 1791-ի երկրաշարժից: Ու-ի հայկ. թաղամասում XIX դ-ի սկզբին եղել է 1500 տուն (հայեր և հրեաներ): 1906-ին Ու-ում բնակվել է 60, 1914-ին՝ 70 տուն հայ: 1889–91-ին կառուցվել է հայկ. եկեղեցի, որին կից գործել է գիշերօթիկ դպրոց: 1926–79-ին՝ Ռեզայե: Ներկայում Ու-ում և մերձակա գյուղերում բնակվում է մոտ 4 հզ. հայ:

ՈՒՐՄԻԱՅԻ ԲԱՐԲԱՌ, Խոյի բարբառ, հայ-ի «ս» ճյուղի բարբառ: Խոսել են Ուրմիայից, Սալմաստից, Բարանդուզից տեղահանված հայերը, որոնք բնակվում են Հայաստանի տարբեր շրջաններում: Ունի երկաստիճան ձայնեղազուրկ (պ-փ) բաղաձայն. համակարգ:

ՈՒՐՈ... (հուն.՝ uron – մեզ), բարդ բառերի մաս. ցույց է տալիս մեզին, միզանյութին, միզասեռ. օրգաններին վերաբերելը (օր.՝ ուրեմիա՝ միզարյունություն):

ՈՒՐՈԼՈԳԻԱ, կլինիկ. բժշկագիտ-յան բաժին. ուսումնասիրում է միզային համակարգի, տղամարդկանց՝ նաև սեռ. օրգանների հիվանդությունները, մշակում ախտորոշման, բուժման և կանխարգելման մեթոդներ:

ՈՒՐՈՏՐՈՊԻՆ, տես *Հեքսամեթիլենթետրամին*:

ՈՒՐՑ (Thymus), խուլեղինջազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի կամ կիսաթփերի ցեղ: Հայտնի է մոտ 150 (400) տեսակ՝ Եվրասիայի, Հս. Աֆրիկայի բարեխառն գոտում, ՀՀ-ում՝ 5՝ գրեթե բոլոր մարզերում: Շատ տեսակներ պարունակում են եթերայուղեր. օգտագործում են բժշկության և սննդի արդ-յան մեջ: Մշակում են որպես համեմունքահոտավետ բույս և դեղաբույս:

ՈՒՐՑԱԳԵՂՁ, թիմուս (thymus), ողնաշարավորների իմուն. համակարգի կենտր. օրգանը: Կաթնասունների մեծ մասի Ու. կրծքի խոռոչում է (առջևի միջնապատի շրջանում): Լավ զարգացած է երիտասարդ տարիքում: Մասնակցում է *իմունիտետի* ձևավորմանը (առաջացնում է T-լիմֆոցիտներ), աճի կարգավորմանը և օրգանիզմի ընդհ. զարգացմանը:

ՈՒՐՑԱԴԱՂՁ (Ziziphora), խուլեղինջազգիների ընտանիքի բազմամյա կիսաթփերի կամ միամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 20 (30) տեսակ՝ Եվրասիայի, Հս. Աֆրիկայի բարեխառն գոտում, ՀՀ-ում՝ 8՝ գրեթե բոլոր մարզերում: Պտուղը պարունակում է եթերայուղեր: Մեղրատու է:

ՈՒՐՈՒԳՎԱՅ (Uruguay), գետ Հվ. Ամերիկայում: Երկ.՝ 2200 *կմ*, ավազանը՝ 307 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 5500 *մ³/վ*: Թափվում է Լա Պլատայի ծոցը: Ծով. նավերի համար նավարկելի է մինչև Պայսանդու ք.:

ՈՒՐՈՒԳՎԱՅ (Uruguay), **Ուրուգվայի Արևելյան Հանրապետություն** (Republica Oriental del Uruguay), պետություն Հվ. Ամերիկայում: Սահմանակից է Բրազիլիային և Արգենտինային: Տարածքը՝ 176,2 հզ. *կմ²*, բն.՝ 3,5 մլն (2016): Մայրաքաղաքը՝ *Մոնտեվիդեո*: Պետ. լեզուն՝ իսպ.: Կառավարման ձևը՝ նախագահահանրապետ.: Պետության և կառ-յան գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը (Ներկայացուցիչների պալատ և Սենատ): Բաժանված է 19 վարչ.

դեպարտամենտների: Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է: Անդամակցում է ՄՄԿ–ին, Մերկոսուրին, ԱոտՀԿ–ին: Զարգացող երկիր է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 12,7 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է նավթամթերք, կաշի, տեքստիլ, գյուղմթերք, փայտանյութ ևն, ներմուծում նավթ, մեքենաներ և սարքավորումներ, սննդամթերք, մետաղներ, հագուստ ևն: Դրամ. միավորը՝ ուրուգվայական պեսո:

Ու–ի տարածքում հնագույն ժամանակներից բնակվել են գուարանի խմբի հնդկաց. ցեղեր: XVI դ–ի 2–րդ կեսին Ու–ի տարածք ներթափանցել են իսպանացիները: 1617–ին ժամանակակից Ու–ի տարածքը մտել է իսպ. Լա Պլատա նահանգապետության մեջ՝ Արլ. ափ անունով, 1776–ին՝ Լա Պլատա փոխարքայության մեջ: Իսպանացիները հիմնել են լատիֆունդիստ. սեփականության համակարգ, որտեղ օգտագործվել է Աֆրիկայից բերված ստրուկների աշխ–ը: 1810–16–ին Ու. անկախ պետություն էր: 1816–ին այն նվաճել են պորտուգալացիները: 1821–ին ներառվել է Բրազիլ. կայսրության, 1825–ին՝ Արգենտինայի կազմի մեջ: 1828–ին հռչակել է անկախություն, որը ճանաչել են Բրազիլիան և Արգենտինան: 1830–ին ընդունվել է Ու–ի Արլ. Հանրապետության սահմանադրությունը: 1838–ին սկսվել է տևական քաղաքաց. պատերազմ՝ արմատ. ազատականների («կարմիրներ», «Կոլորադո» կուս–յուն) և պահպանողականների («սպիտակներ», «Բլանկո» կուս–յուն) միջև: Մինչև 1950–ական թթ. իշխանությունը վարել են «Կոլորադո» կուս–յան ներկայացուցիչները: 1973–ին տեղի է ունեցել պետ. հեղաշրջում, դադարեցվել է սահմանադրության գործողությունները: 1985–ին անցում է կատարվել կառավարման սահմանադր. ձևին: 1985–90, 1995–2005–ին իշխանության ղեկին եղել է «Կոլորադո», 1990–95–ին՝ «Բլանկո» կուս–յունը: 2005–ից կառ–յունը կազմավորում է ձախ և ձախ կենտրոնամետ կուս–յունների «Լայն ճակատ» դաշինքը:

Հայերն Ու–ում հաստատվել են XX դ–ի սկզբին (առաջին հայերը՝ 1835–ից, 1900–ին՝ 15 հայ). գաղութը ձևավորվել է 1920–ական թթ–ին: Նրանք եկել են Կիլիկիայից, հետագայում՝ Մերձ. Արևլքի երկրներից: 1–ին գաղութ. կառույցը հիմնադրվել է 1923–ին: 1920–ական թթ–ի վերջերին հայերի թիվը հասել է 4 հզ–ի, ներկայում շուրջ 15 հզ է, հիմնականում՝ Մոնտեվիդեոյում: 1983–ին կազմավորվել է ՀԱԵ Ու–ի թեմը: 1992–ին՝ «Հայաստան» համահայկ. հիմնադրամի Ու–ի հանձնախումբը: Մոնտեվիդեոյում գործում է միակ հայ առաքել. Սբ Ներսես Շնորհալի եկեղեցին, կան նաև կաթոլիկ և ավետարան. եկեղեցիներ: Գործում են Նուբարյան–Ալեք Մանուկյան և Ներսեսյան ամենօրյա վարժարանները, տարբեր հաս–քաղ., բարեգործ., մշակութ., հայրենակց. միություններ, ակումբներ ևն: Հայտնի են «Կոմիտաս», «Արամ Խաչատրյան» նվագախմբերը, «Կոռունկ» երգչախումբը, «Գայանե», «Շիրազ» պարախմբերը: Գործում են «Ռադիո Արմենիա» և «Կոմիտաս» ամենօրյա ռադիոժամերը, հրատարակվում են «Ապրիլ», «Հայ ընտանիք» պարբերները (հայ–իսպ.): Առաջին դպրոցը բացվել է 1923–ին: Ու. առաջին երկիրն է, որ պաշտոնապես ճանաչել է Թուրքիայում հայերի ցեղասպանության փաստը՝ ապրիլի 24–ը հայտարարելով «Հայ նահատակների հիշատակի օր»: 1971–ին Մոնտեվիդեոյի կենտր. հրապարակներից մեկում կանգնեցվել է Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան: Հրապարակը կոչվել է «Արմենիա»: «Արմենիա» անունով հրապարակ կա նաև Պրիապոլիս ք–ում:

ՈՒՐՈՒԳՎԱՅԻՆԵՐ, 1. Ուրուգվայի հիմն. բնակչությունը: Հիմնականում եվրոպեոիդ են, մի մասը՝ նեգրոիդ: Ընդհ. թիվը՝ 2,9 մլն (2010): Լեզուն՝ իսպ.: Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է:

ՈՒՐՈՒԿ 1. ք–պետություն Շումերում (շումեր.՝ Ունուգ, աստվածաշնչ.՝ Էրեքոն, հուն.՝ Ergon)՝ Եփրատի ստորին հոսանքում: Մ. թ. ա. XXVIII–XXVII դդ–ում (կիսաառասպել. կառավարիչներ Էնմերկարի, Լուգուլբանդի, Գիլգամեշի օրոք) Ու. միավորել է Հվ. Միջագետքը (Ու–ի 1–ին հարստություն): XXIV դ–ում Լուգուլզագեսի օրոք եղել է Շումերի մայրաքաղաքը: Ապա այն գրավել է Սարգոն Հինը: Մ. թ. ա. XXII դ–ի վերջին Ու–ի արքա Ուտուխեգալը ստեղծել է «Շումերի և Աքքադի միացյալ թագավորություն». Ու–ի մահից հետո իշխանությունը փոխանցվել է Ուր–Նամմուին՝ Ուրի 3–րդ հարստության հիմնադրին: Ու., որպես գլխ. քաղաք, գոյատևել է մինչև մ. թ. ա. I հզ–ամյակը: Մ. թ. ա. VIII–II դդ–ում տաճարային ինքնավար քաղաք էր՝ Նորբաբելոնյան, Աքեմենյան և Սելևկյան պետությունների կազմում: Մ. թ. III դ–ում ավերել են Սասանյանները:

2. Մ. թ. ա. IV հզ–ամյակի հնագիտ. մշակույթ Հվ. Միջագետքում: Կոչվել է ըստ հնագույն Ու. քաղաքի 14–4–րդ շերտերի գտածոների: Հաջորդել է ***Ուրեյդյան մշակույթին*** (Ու–ում՝ 18–15–րդ շերտեր): Բնորոշ են ոռոգովի հողագործությունը, զարգացած մետաղագործությունը: Հայտնաբերվել են գլանաձև կնիքներ (10–րդ շերտ), շումերների հնագույն պատկերագիր վավերագրեր՝ կավե սալիկների վրա (4–րդ շերտ), մոնումենտալ «Կարմիր շենքը», «Սպիտակ տաճարը» ևն, IV հզ–ամյակի 2–րդ կեսի քառանիվ սայլեր: Ծավալվել է մշակութ. և առևտր. թափանցում դեպի Հս. Սիրիայի, Հվ–արմ. Իրանի, Էլամի տարածքներ:

ՈՒՐՈՒՄՇԵՎՍԿԻ Սերգեյ Պավլովիչ (1908–1974), ռուս. կինոօպերատոր, ռեժ.: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1951): «Գյուղական ուսուցչուհի» (1947), «Քառասունմեկերորդը» (1956), «Թռչում են կռունկները» (1957), «Ես Կուբան եմ» (1964) կինոնկարների օպերատորն է, «Շորորավարգ ձիու վազքը» (1970, ըստ Չ. Այթմատովի «Մնաս բարով Գյուլսարի» վիպակի): «Երգի՛ր, պե՛տ» (1973, նաև սցենարի համահեղ.) կինոնկարների օպերատորն ու ռեժ–ը:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1948, 1952):

ՈՒՐՖԱ, **Ուրիա**, **Եղեսիա**, ք. Թուրքիայում: (Ու–ի հին շրջանի ու միջնադարի պատմությունը տես ***Եղեսիա*** հոդվածում): XIX դ–ի սկզբին Ու. ունեցել է մոտ 2 հզ. տուն հայ, ԱՀՊ–ի նախօրեին՝ շուրջ 35 հզ. հայ բնակիչ: Հայերն զբաղվել են արհեստով, առևտրով, երկրագործությամբ: Ու–ում ասեղնագործված սրբիչները, զգեստները, ծածկոցները վաճառվել են Անգլիայում, ԱՄՆ–ում և այլ երկրներում: XVIII դ–ում Ստեփանոս ճարտ–ն Ու–ում կառուցել է բազմաթիվ շինություններ: Հայերն ունեցել են իրենց եկեղեցիներն ու դպրոցները: Աբդուլհամիդյան ջարդերի ժամանակ (1895–ի հոկտ.) կոտորվել է 10 հզ. անզեն բնակիչ: 1915–ին հայերը դիմել են ինքնապաշտպ–յան (տես ***Ուրֆայի հերոսամարտ*** 1915): ԱՀՊ–ում Թուրքիայի պարտությունից հետո Ուրֆայի հայերը վերադարձել են, սակայն քեմալ. հալածանքների պատճառով հեռացել են Սիրիա, Ֆրանսիա, մի մասն էլ՝ Հայաստան:

ՈՒՐՖԱՅԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏ 1915, *Ուրֆայի* հայերի ինքնապաշտպ. մարտերը սեպտ–հոկտ–ին: Օգոստ. 19–ին թուրք. իշխանությունների սադրանքով մահմեդ. ամբոխը կոտորել է 300–400 հայերի: Ուրֆահայերը դիմել են ինքնապաշտպ–յան. ստեղծվել է զինվ. խորհուրդ՝ Մկրտիչ Յոթնեղբայրյանի ղեկավարությամբ: Ինքնապաշտպանները 800 հոգի էին, ըստ այլ աղբյուրի՝ 2 հզ.: Կանանցից ու աղջիկներից կազմվել է մարտ. 3 ջոկատ՝ թվով 200 հոգի:

Հերոսամարտն սկսվել է սեպտ. 29–ին: Մարտերն ընթացել են փոփոխ. հաջողություններով, սակայն հոկտ. 23–ին թուրքերին հաջողվել է ճնշել դիմադրության հիմն. կետերը: Բազմաթիվ հայեր, այդ թվում՝ վիրավոր Մ. Յոթնեղբայրյանը, թշնամու ձեռքը չընկնելու համար ինքնասպան են եղել: Մոտ 15 հզ. հայ (հիմնականում՝ կին և երեխա) աքսորվել է:

ՈՒՖԼԻՍՅԻԽԵ («Տիրակալի ամրոց»), վիմափոր ք. Վրաստանում՝ Գորի ք–ից 10 *կմ* հեռ–յամբ՝ համանուն գյուղի մերձակայքում: Հիմնադրվել է մ. թ. ա. I հզ–ամյակի 1–ին կեսին: IX–XI դդ–ում եղել է Վրաստանի գլխ. քաղաքներից, առժամանակ՝ մայրաքաղաքը:

Պահպանվել են բնակելի և տնտ. շենքեր, զարդափոսերով (կեսոնային) կամարով (հելլենիստ. ժամանակաշրջան) դահլիճ, VI–VII և X–XI դդ–ի բերդապարսպի ու տաճարների մնացորդներ:

ՈՒՖՍԱԼԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Շվեդիայի և առհասարակ Սկանդ. թ–կղզու հնագույն համալսարանը: Հիմնադրվել է 1477–ին: 2016–ին ուներ շուրջ 45 հզ. ուսանող: Հայտնի է հազվագյուտ դրամների և մեդալների հարուստ հավաքածուով (40 հզ. նմուշ):

ՈՒՖՄ, ք., ՌԴ ***Բաշկիրիայի*** մայրաքաղաքը: Բն.՝ շուրջ 1 մլն (2009): Երկթղ. կայարան է: Կան նավթավերամշակման, քիմիահեղագործ., նավթաքիմ., մեքենաշին. և մետաղամշակման և այլ ձեռն–ներ: Հիմնադրվել է 1586–ին:

ՈՒՖՈԼՈԳԻԱ (անգլ.՝ ufology, UFO կամ ՉԹՕ–ների ուսումնասիրություն), ուսումնասիրության բնագավառ. զբաղվում է ՉԹՕ–ների ականատեսների դիտարկումների հաղորդումների հավաքման, դասակարգման և այդ դիտարկումների մեկնաբանության հարցերով: Ու–ի հիմն. դժվարություններն այդպիսի դիտարկումների օբյեկտիվության և կրկնելիության անհնարինությունն են:

ՈՒՖՈՒԵ–ԲՈՒԱՆՅԻ (Houphouët–Boigny) Ֆելիքս (1905–1993), Կոտ դ'Իվուարի նախագահ՝ 1960–93–ին, վարչապետ՝ 1959–60–ին: 1980–ից՝ երկրի կառավարող Դեմոկրատ. կուս–յան (հիմն.՝ 1946) պատվ. նախագահ, 1947–80–ին՝ նախագահ:

ՈՒՖՖԻՅԻ (Uffizi), պատկերասրահ Ֆլորենցիայում: Հիմնադրվել է XVI դ–ում: Ու–ում պահվում է Վերածննդի շրջանի իտալ. արվ–ի, արևմտաեվրոպ. գեղանկարչության և գրաֆիկայի նմուշների, նաև նկարիչների (այդ թվում՝ Հ. Այվազովսկու) ինքնադիմանկարների խոշորագույն հավաքածու: Շենքը կառուցվել է 1560–80–ական թթ–ի սկզբին (ճարտ–ներ՝ Ջ. Վազարի և Բ. Բուոնտալենտի):

Փ

Փ, հայ. այբուբենի 35–րդ տառը, անվանումը՝ փյուր: Ունի ***գրչագիր***, ***երկաթագիր***, ***բոլորգիր***, ***շղագիր***, ***նոտրգիր*** տառատեսակները: Հայ–ի երկշրթնային պայթական (շփական) ընչեղ խուլ բաղաձայն հնչյուն (հնչույթ) է: Թվային արժեքը՝ 8000:

ՓԱԲԻՈՍ ՄԱՔՍԻՄՈՍ Քվինտոս Կունկտատոր (Quintus Fabius Maximus Cunctator, բառացի՝ դանդաղկոտ, մ. թ. ա. 275–203), հռոմեացի զորավար: 5 անգամ ընտրվել է կոնսուլ, երկիցս՝ դիկտատոր: Պունիկյան 2–րդ պատերազմի ժամանակ խուսափել է վճռական ճակատամարտից՝ կիրառելով ***Հաննիբալի*** բանակն աստիճանաբար հյուծելու մարտավարություն:

ՓԱԴԻՇԱՀ (պհլ.՝ թագավոր), միապետի տիտղոս հին Պարսկաստանում: Տարածվել է նաև Մերձ. և Միջին Արևելքի որոշ երկրներում [Օսմ. կայսրություն (XV դ.–1922), Աֆղանստան (1926–73) ևն]:

ՓԱԼԻԱՇՎԻԼԻ Զաքարե Պետրեի (1871–1933), վրացի կոմպոզիտոր: ՎԽՍՀ ժող. արտիստ (1925): Վրաց. ազգ. պրոֆեսիոնալ երաժշտության հիմնադիրներից: Փ–ի «Արեսալոմ և Էթերի» (1918), «Դաիսի» («Մթնշաղ», 1923), «Լատավրա» (1927) օպերաները դարձել են վրաց. դաս. երաժշտության հիմք: Գրել է նաև «Հանդիսավոր կանտատ» (1927), սյուիտ նվագախմբի համար (1928), խմբերգեր և այլ գործեր: Փ–ու անունով է կոչվել (1971–ից) Թբիլիսիի ՕԲԹ–ն: Գործում է Փ–ու պետ. թանգարանը:

ՓԱԼՄԵՐ (Palmer) Էդուարդ Վանս (կեղծանունը՝ Ռաննի Դեյլի, 1885–1959), ավստրալիացի գրող: Հեղինակ է «Ավանպոստ» (1924), «Անցում» (1930) վեպերի, «Գոլքոնդա» (1948), «Յանքի ժամանակը» (1957) և «Ականավոր գործիչը» (1959) եռերգության, նաև պատմվածքների, պիեսների:

ՓԱԽՍՏԱԿԱՆ, անձ, որը ռասայական, ազգ., կրոն., որոշակի սոցիալ. խմբի պատկանելության կամ քաղ. համոզմունքների համար հետապնդումների զոհ դառնալու երկյուղի պատճառով հայտնվել է իր քաղաքաց. պատկանելության պետությունից դուրս և չի կարող կամ չի ցանկանում օգտվել այդ պետության պաշտպ–յունից և/կամ չունենալով որևէ պետության քաղաքացիություն՝ չի կարող կամ չի ցանկանում վերադառնալ հիմն. բնակության վայր կամ օգտվել այն պետություններից որևէ մեկի պաշտպ–յունից, եթե անձը միաժամանակ դրանց քաղաքացի է: 1999–ին ընդունվել է «Փախստականների մասին» ՀՀ օրենքը (2008–ին փոխարինվել է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով):

ՓԱԿ ՀԱՄԱԿԱՐԳ կառավարման, ԱԿՀ–երի հիմն. տեսակներից, որտեղ կառավարող փոխազդեցություններն առաջանում են կառավարվող մեծությունների արժեքների պահանջվող օրենքից շեղման փոփոխություններից: Փ. հ–ի օրինակ է շարժիչի առանցքի պտտման հաճախության կենտրոնախույս կարգավորիչը:

ՓԱՀԼԱՎԻՆԵՐԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ, շահերի հարստություն Իրանում՝ 1925–79–ին: Ներկայացուցիչներն են Ռեզա Շահ Փահլավին և Մոհամմադ Ռեզա Փահլավին:

ՓԱՄԲԱԿ, գետ ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Սևանա լճի ավազանում: Սկիզբ է առնում Սևանի լ–շղթայի հվ–արմ. լանջերից՝ 2880 *մ* բարձր–ից: Երկ.՝ 10 *կմ*, ավազանը՝ 26 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 0,19 *մ*^{3}/*վ* (Փամբակ գ.), հոսքը՝ 6 մլն *մ*^{3}: Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով:

ՓԱՄԲԱԿ, գետ ՀՀ Լոռու մարզում: Սկիզբ է առնում Ջաջուռի թամքոցի արլ. լանջից՝ 2100 *մ* բարձր–ից: Երկ.՝ 92 *կմ*, ավազանը՝ 1370 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 12 *մ*^{3}/*վ*, առլգն՝ 171 *մ*^{3}/*վ* (23.06.1976), հոսքը՝ 373 մլն *մ*^{3}: Միախառնվելով Ձորագետին՝ կազմավորում է ***Դեբեդը***: Մնումը հիմնականում հալոցքային (39 %) և ստորերկրյա (33 %) է, վարարումը՝ մարտ–հունիսին, որի ընթացքում ձևավորվում է տարեկան հոսքի 64 %–ը: Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով:

ՓԱՄԲԱԿ, **Բամբակի ձոր**, գվո Այրարատ նհնգ–ում: Համապատասխանել է Նիգ գվո–ին: Հիշատակում է ***Վարդան Արևելցին*** (XIII դ.):

ՓԱՄԲԱԿԻ ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, միջլեռն. տեկտ. իջվածք ՀՀ հս–ում՝ Փամբակի ու Բազումի լ–շղթաների միջև: Զգվում է Ջաջուռի լ–անցքից մինչև Գայլաձորի կիրճը՝ 1300–1600 *մ* բարձր–յան վրա: Ընդգրկում է Փամբակ գետի վերին հոսանքի, Չիչխան, Վանաձոր ու Տանձուտ գետերի հովիտները: Արմ. ընդարձակ ու հարթ մասն զբաղեցնում է Պարնիի գոգհովիտը: Կան շինանյութերի (գրանիտ ևն) հանքավայրեր, տորֆի ու լիգնիտի պաշարներ: Կլիման բարեխառն է, լանդշաֆտը՝ լ–տափաստան. ու լ–անտառ.: Փ. գ–ում են Վանաձոր և Սպիտակ ք–ները: Աշակում են հացահատիկ, կերաբույսեր, բանջարեղեն, պտուղներ:

ՓԱՄԲԱԿԻ ԳՐԱՆԻՏԻ ՀԱՆՔԱՎԱՅՐ, ՀՀ Լոռու մարզի Փամբակ գ–ի մոտակայքում: Շահագործվում է 1880–ից՝ բաց եղանակով: Պաշարները՝ ավելի քան 6410 հզ. *մ*^{3} (520 հզ. *մ*^{3}–ը՝ բարձրորակ): Օգտագործվում է շին–յան և քանդ–յան մեջ:

ՓԱՄԲԱԿԻ ԼԵՌՆԱՆՁՔ, Փամբակի լ–շղթայում՝ ՀՀ Լոռու և Արագածոտնի մարզերի սահմանագլխին՝ 2152 *մ* բարձր–յան վրա: Փամբակի հովիտը Զրաշեն–Ծիլքար ճանապարհով կապում է Արագածոտնի մարզին:

ՓԱՄԲԱԿԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Փոքր Կովկասի ներքին շարում՝ ՀՀ Լոռու մարզում: Ձրրաժան է Կուր և Արաքս գետերի ավազանների միջև: Ձգվում է հս–արմ–ից հվ–արլ.՝ Ջաջուռի լ–անցքից մինչև Սևանա լճի հս–արմ. ափը: Երկ.՝ մոտ 106 *կմ*, լայն.՝ մինչև 15 *կմ*, առլգն բարձր.՝ 3101 *մ* (Թեժ լ.): Նշանավոր են Փամբակի և Սպիտակի լ–անցքերը: Լանջերից սկիզբ են առնում Քասախ, Աղստև, Սարմարիկ, Տանձուտ և այլ գետեր: Փ. լ–ի հս–արմ. ստորոտին՝ Շիրակամուտ գ–ի շրջակայքում էր 1988–ի Սպիտակի երկրաշարժի վերնակենտրոնը:

ՓԱՄԲՈՒԿՉՅԱՆ Սարգիս Արշալույսի (ծ. 1940), անասնաբույծ–ընտրասերումնաբան: Գղտ. գիտ. դ–ր (2009), պրոֆ. (2013): Աշխ–ները վերաբերում են կիսանրբագեղմ ոչխարների նոր ցեղերի բուծման, տոհմ. աշխ–ների կատարելագործման հարցերին:

ՓԱՄԲՈՒԿՉՅԱՆ Գևորգ (Բամպուկճյան Գէորգ, 1923–1966), մատենագետ, հայագետ, խմբ., թարգմանիչ: 1970–78–ին՝ ***«Շողակաթ»*** թերթի, ապա՝ տարեգրքի գլխ. խմբ.: Հեղինակ է «Յակոբ Նալեան Պատրիարք (1706–1764). կեանքը, գործերը եւ աշակերտները» (1981), «Յովհաննէս Պատրիարք Կոլոտ (1678–1741) եւ իր աշակերտները» (1984) և այլ մենագրություններ, «Գրություններ Պոլսի մասին» (2002), «Հայատառ թուրքերէն բնագրեր» (2003), «Հայերի կենսագրությունները» (2003) ժող–ների: Խմբագրել, ծանոթագրել ու հրատարակել է Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի և Միքայել քհն. Երամյանի աշխ–ներից:


ՓԱՄԲՈՒՔՉՅԱՆ Իրեն (1939–1988), դաշնակահարուհի: 1949–ից՝ Փարիզում: Հանդես է եկել որպես մենակատար, նաև նվագախմբերի հետ: Թուլոնի ազգ. կոնսերվատորիայի 1–ին, Ջ. Բ. Վիոտտիի անվ. (Իտալիա), Մ. Կանալեսի անվ. (Իսպանիա) միջազգ. մրցույթների 2–րդ մրց–ներ:

ՓԱՄԲՈՒՔՉՅԱՆ Հարութ, **Ձախ Հարութ** (ծ. 1950), երգիչ: ՀՀ վաստ. արտիստ (2015): Կատարումներից հայտնի են «Հայի աչքեր», «Տարիներ, տարիներ», «Ձյուն», «Մեր սիրո աշունը», «Կիթառ», «Սիրում եմ քեզ» և այլ երգեր:

ՓԱՄՈՒԿ (Pamuk) Օրհան (ծ. 1952), թուրք գրող: Հեղինակ է «Սպիտակ ամրոց»

(1985), «Սև գիրք» (1990), «Իմ անունը Կարմիր է» (1998), «Ստամբուլ. հիշողությունների քաղաք» (2003), «Անմեղության թանգարան» (2008), «Շիկահեր կինը» (2016) և այլ վեպերի: «Ձյունը» (2002, հայ.՝ 2009) վեպի հիմն. գործողությունները կատարվում են Կարսում, և կան որոշ հիշատակություններ հայերի և Հայոց ցեղասպանության մասին: Նոբելյան մրց. (2006):

ՓԱՄՓՈՒՇՏ պարկուճով, 1. ամբողջության մեջ միավորված գնդակը (հրետան. արկը, կոտորակը, լուս. կամ ազդանշան. լիցքը), նետող. լիցքը և բոցավառիչը: Այսպիսի Փ. երբեմն անվանում են ունիտար (միասնական) (նկ.): Տարբերում են հրաձգ. և հրետան. զենքի Փ-ներ: Հրաձգ. զենքի Փ-ները լինում են ատրճանակի, ռևոլվերի, պարուրակային, ինքնաշխատ և խոշորատրամաչափ: Փ-ի տարատեսակներ են լուսավորող, լուսավորող-ազդանշան. և ազդանշան., մարզ. և որսորդ. զենքերի Փ-ները: Թղթե պարկուճով առաջին ունիտար Փ-ները (ասեղի հրացանի) հայտնվել են 1841-ին Պրուսիայում, նետվող պարկուճովները՝ 1860-ական թթ-ին ԱՄՆ-ում: Հրետան. Փ-ները զանգվածաբար տարածվել են XIX դ-ի վերջին:



Հրետանային սովորական փամփուշտ. 1. արկ, 2. պարկուճ, 3. անծուխ վառոդի լիցք, 4. բոցավառիչ, 5. հրապարհային ականոց

ՓԱՅԱԼՅԱՆ Սիմոն (ծ. 1958), պատմաբան: Քաղ. գիտ դ-ր (1992), պատմ. գիտ. դ-ր (2003), պրոֆ. (2002): Բոստոնի համալսարանի (ԱՄՆ) Չառլզ և Էլիզաբեթ Քենոսյանի անվ. հայոց պատմության և գրկ-յան ամբիոնի վարիչ-պրոֆ. (2007-ից): Աշխ-ները (անգլ.) վերաբերում են խորհրդ. Հայաստանում մարդու իրավունքների, բռնատիրության և ժողովրդավարության խնդիրներին, հայոց պատմությանը («Հայաստանի պատմություն. սկզբից մինչև մեր օրերը». 2007), Հայկ. հարցին, Հայոց ցեղասպանությանը («Միացյալ Նահանգների քաղաքականությունը Հայկական հարցի նկատմամբ և Հայոց ցեղասպանությունը», 2005) և այլ հարցերի:

«ՓԱՅԼԱԿ», հաս., քաղ., գր. եռօրյա թերթ (1915–17, Շուշի), բոլշևիկների (սկզբում՝ մենշևիկների) հրտ-յուն: Խմբ-ներ՝ Խաչիկ Սամվելյան, Լևոն Վարդապետյան:

ՓԱՅԼԱՐՆԵՐ, միներալներ, շերտավոր կառուցվածքով ալյումասիլիկատների խումբ: Ընդհ. քիմ. կազմը՝ $XY_{2-3}[(OH, F)_2|Z_8O_{10}]$, որտեղ X = K, Na, Ca, Y = Al, Mg, Fe, Z = Si, Al: Ըստ X-ի իոնների բնույթի՝ Փ. բաժանվում են բուն Փ-ի, որտեղ X = K, Na, և փխրուն Փ-ի, որտեղ X = Ca: Կարծր.՝ 2,5–4, խտ.՝ 2,7–3,3 $գ/սմ^3$: Արժեքավոր էլեկտրամեկուսիչ նյութեր են: Լեպիդոլիտից պատրաստում են հատուկ օպտիկ. ապակիներ: Կիրառվում են նաև շին. ցեմենտի, ռետինի արդ-յան, ներկերի, պլաստմասսաների արտադր-յան մեջ:

ՓԱՅԼՈՒՆ ՄԻՋԱՏՆԵՐ, 1. միայնակ *կրևպտների* վերնաշնտանիք: Երկ.՝ 2,5–15 *մմ*: Հայտնի է ավելի քան 2000 տեսակ՝ տարածված լայնորեն: Մի շարք Փ. մ. մեղունների, սողոցողների և այլ թաղանթաթևավորների մակաբույծ են: 2. Բզեզների ընտանիք: Երկ.՝ 1–15 *մմ*, մարմինն ուռուցիկ է, փայլուն: Հայտնի է ավելի քան 3000 տեսակ՝ տարածված լայնորեն: Որոշ տեսակներ բուսակեր վնասատուներ են, օր.՝ կոլզայի ծաղկակերը, դիակերները:

ՓԱՅՏԱՂ, մարդու և ողնաշարավոր կենդանիների պարենքիմային կենտ օրգան՝ որովայնի խոռոչում: Արյան հիմն. պահեստներից է («դեպո»), մասնակցում է արյունաստեղծմանը, նյութափոխանակությանը, կատարում իմունականսբ. և պաշտպ. ֆունկցիաներ, մշակում հակամարմիններ, կասեցնում և վնասազերծում է բակտերիաներն ու տոքսինները, քայքայում ծերացած էրիթրոցիտներն ու թրոմբոցիտները: Փ-ին բնորոշ հիվանդություններից է մեծացումը՝ **սպլենոմեգալիա** (հուն.՝ splen – փայծաղ և megas, սեռ. հոլ.՝ megalos – մեծ):

ՓԱՅՆ (Pines) Դեվիդ (ծ. 1924), ամերիկացի ֆիզիկոս: ԱՄՆ ԳԱԱ (1973), ՌԳԱ արտ. (1988) անդամ: Աշխ-ները վերաբերում են միջուկի տեսությանը (միջուկի գերհոսուն մոդել), պինդ մարմնին (պլազմոնի գաղափարը), պլազմային, աստղագիտ-յանը (նեյտրոն. աստղեր, սպիտակ թզուկներ), ցրման տեսությանը, բարձրաստիճան գերհաղորդականության: Ց. Է. Լիլիենֆելդի մրց. (2016):

ՓԱՅՆԱԹՐԹՈՒՐՆԵՐ, տարաբեղ թիթեռների ընտանիք: Թևերի բացվածքը՝ մինչև 22 *սմ* (Ավստրալիայում), հիմնականում՝ մինչև 10 *սմ*: Հայտնի է մինչև 1000 տեսակ՝ առավելապես Աֆրիկայի և Ասիայի արևադարձներում: Թրթուրները վնասում են պտղատու այգիներն ու անտառները, բույսի հյուսվածքներում անցքեր են բացում կրծելով:

ՓԱՅՆԱՏՈՒԽ, սպունգանման (մանր ծակոտկեն) բարձր ածխաջրածնապարունակ նյութ, ստացվում է բնափայտի հիդրայքայումից (պիրոլիզ)՝ առանց օդի մուտքի: Օգտագործվում է բյուրեղ. սիլիցիումի, ծծմբածխածնի, սև և գունավոր մետաղների, ակտիվ ածխի արտադր-յան մեջ, որպես վառելանյութ՝ կենցաղում:

ՓԱՅՏԱԿԱՐԱՆ, **Կապք**, **Կազբք**, Մեծ Հայքի 11-րդ նահգ-ը Կուրի և Երասխի ստորին հոսանքի շրջանում՝ Կասպից ծովի արմ. ափին: Ըստ «Աշխարհացոյցի» ունեցել է 13 գվռ: Փ. ռազմաքաղ. մեծ կարևորություն է ստացել հս-կովկաս. լեռնանցքների դեմ մղվող պայքարում: Հայ *Արշակունիների* օրոք հիմնադրված Փայտակարան ք-ը՝նշանակալից է եղել *Տրդատ* Գ Մեծի (227–330) օրոք: Հիշատակվում են նաև Վարդանակերտ ք-ը (ներկայի Ալտան բերդի ավերակների տեղում), Տիգրանակերտ ավանը: Մեծ Հայքի 387-ի բաժանումից հետո Կասպքը Փայտակարան ք-ի հետ մնացել է Արլ. Հայաստանի կազմում մինչև Արշակունյաց թագավորության անկումը (428): XVIII դ-ի կեսին Փ-ի տարածքում ձևավորվել են Թալիշի (1809-ին միացվել է Ռուս. կայսրությանը) և Ղարադաղի պարսկ. խանությունները: Գյուլիստանի պայմանագրով (1813) վավերացվել է Փ-ի արլ. մասի անցումը Ռուս. կայսրությանը, իսկ արմ. հատվածը մնացել է Պարսկաստանի կազմում: XIX դ-ի 2-րդ կեսին և XX դ-ի սկզբին Թալիշի խանության տարածքը մտել է Բաքվի նահգ-ի մեջ: 1920-ի ապրիլից Փ-ի արլ. շրջաններն Ադրբեջանի կազմում են:

ՓԱՅՏԱԿՈՒՃ, կոպճավազի վրա տեղակայվող ռելսերի հենարան: Լինում են փայտե (հականեխիչներով տոգորված), երկաթբետոնե, ավելի սակավ՝ մետաղե Փ-եր:

ՓԱՅՏԱՀԱՏ ԲԶԵԶՆԵՐ, տես *Երկարատեղիկներ:*

ՓԱՅՏԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ, հիմնադրվել է 1977-ին Երևանում՝ Ալբերտ Ստեփանյանի նախաձեռնությամբ: Գործում են հնագույն մշակույթի, քանդակի, կիրառ. արվ-ի բաժինները: Ցուցադրվում են նաև խեցեղենի, սև և գունավոր մետաղների, կարպետագործության նմուշներ: Փ. թ.նպաստում է ազգ. փայտարվ-ի ավանդույթների վերականգնմանն ու զարգացմանը:

ՓԱՅՏԱՓՈՐՄԳՐՈՒԹՅՈՒՆ, **քսիլոգրաֆիա** (< հուն. xylon – ծառ և grapho – գրություն), փորագրության հնագույն ձևը, որով տպագրվել են նաև առաջին գրքերի պատկերներն ու *էսբամպները:* Փ-յան արվ-ը ձևավորվել է Չինաստանում VI–VII դդ-ում, իսկ պահպանված ամենահին փայտափորագիր գիրքը (փորագրիչ՝ Վան Չի) չին. «Ալմաստե սուտրան» է (868, Բրիտ. թանգարան): Եվրոպայում առաջին փայտափորագիր պատկերներն ստեղծվել են XIV–XV դդ-ի սահմանագծին: Վերածննդի վարպետների որոնումներն այս ոլորտում ի մի է բերել և ամբողջացրել Ա. *Դյուրերը*: XVI դ-ում Իտալիայում սկիզբ է առել հատիչափորագրությունը, որով հնարավոր էր կատարել երփնագիր վերարտադրություն (Մ. Ռայմոնդ): XVII–XVIII դդ-ում ծաղկել է ճապոն. Փ.: XIX դ-ում գերակշռել է այսպես կոչված գլխանիստային Փ. (համարվում է Թ. Բյուիկի հայտնագործությունը 1780-ական թթ-ին):

Հայկ. տպագրության մեջ *Հակոբ Մեղապարտի* տպագրած առաջին գրքերից սկսած՝ պատկերները տպագրվել են Փ-յան միջոցով: Փայտափորագիր բարձրորակ կաղապարների պատրաստումով հայտնի էին *Գրիգոր Մարգվանեցին, Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիները*, Վենետիկի, Հռոմի, Կալկաթայի, Կ. Պոլսի փորագրիչ-նկարիչները: XX դ-ի սկզբից Փ-յան տեխնիկայով աշխատել են ու այն զարգացրել Վարդգես *Սուրենյանցը*, Հարություն Շամշինյանը, Գաբրիել Գյուրջյանը, Հակոբ *Կոջոյանը*, Զավեն Հովսեփյանը և ուր.: XX դ-ից սկսած Փ. հիմնականում օգտագործվել է հաստոց. ու գրքի գեղ. փորագրանկարներ ստեղծելու համար:

ՓԱՅՏԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, բնակելի տան փայտե կառուցվածք. տարրեր, Հայաստանում գործածվել են մ. թ. ա. III հզ-ամյակից, ապա՝ վաղ և զարգացած միջնադարի պալատ. համալիրներում (Դվին, Արուճ, Զվարթնոց, Անի ևն): Փ. ճ-յան ուշագրավ օրինակ է գլխատունը՝ *հազարաշենի* ձևով: Զուտ փայտե կառույցներ պահպանվել են ժող. ճարտ-յան մեջ: Քանդակազարդ պատշգամբների, փայտե ձևավոր առաստաղների հարուստ ձևեր են գործածվել XIX–XX դդ-ում քաղաք. (հատկապես՝ Երևանում) և գյուղ. ճարտ-յան մեջ: Այժմ Փ. ճ-յան տարրեր օգտագործում են ժամանակավոր կառույցներում (կրպակներ, տաղավարներ, փոքր ձևեր ևն):

ՓԱՅՏՅԱՆ Արշալույս Զավենի (ծ. 1959), ՀՀ բանակի գեն-լեյտ. (2009): 1989–94-ին մասնակցել է ՀՀ և ԼՂՀ շրջանների ինքնապաշտպ. և ազատագր. մարտերին: 1998–2000-ին՝ ՀՀ ՊՆ ռազմ. ինստ-ի պետ, 2000–06-ին՝ զորամիավորման հրամ., 2006–12-ին՝ ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի տեղակալ: 2012-ից՝ պաշտոնաթող:

ՀՀ և ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի, ՀՀ «Վարդան Մամիկոնյան» (2011) շքանշաններ, ՀՀ Արիության, ՊՆ «Գարեգին Նժդեհ», «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալներ:

ՓԱՅՏՈՋԻԼՆԵՐ (Cimex lectularius), կիսակարծրաթև միջատների կարգ: Առջևի թևերը հիմքի մոտ մաշկային են, գագաթինը՝ ցանցանման: Բերան. ապարատը ծակող-ծծող է: Բնորոշ են մաշկ. հոտարձակող գեղձերը: Երկ.՝ 0,7 *մմ*–12 *սմ*: Հայտնի է 25–30 հզ. տեսակ: Մակաբույծ են (օր.՝ անկողնու մլուկը), գիշատիչ և բուսակեր (կրիայիկներ և այլ տեսակներ):

ՓԱՅՏՓՈՐՆԵՐ (Picidae), փայտփորանմանների կարգի թռչունների ընտանիք: Երկ.՝ 8–51 *սմ*: Հայտնի է մոտ 200 տեսակ՝ տարածված լայնորեն, ՀՀ-ում՝ 7 (կանաչ, սև, խայտաբղետ, միջին, սիրիական, սպիտակամեջք Փ. և վիզգցուկ, վերջին 4-ի կենսակերպն ուսումնասիրված է մասնակի): Փչակաբնակ են, միջատակեր, սնվում են ծառերի վնասատու բզեզների ձվերով, թրթուրներով ու հարսնյակներով: Երկար լեզվով կերը դուրս են բերում ծառի կեղևի կամ փտած բնի խորքից:

ՓԱՆԴԻՒ, **բամբիոն**, լար. կսմթթ. հնագույն երաժշտ. գործիք: Հայ վիպասանները Փ-ով նվագակցել են իրենց վեպերը և «ցցոց ու պարուց» երկերը: Հավանաբար եղել է քառալար կամ առնվազն եռալար: Գործածությունից դուրս է եկել XVI դ-ից:

ՓԱՆԻՍ, XVII–XVIII դդ-ի ճարտ.: 1708-ին կառուցել է Սյունիքի մարզի Անգեղակոթ գ-ի 1 զույգ որմնասյուներով միանավ թաղածածկ Սբ Ստեփանոս եկեղեցին, մուտքը՝ հվ-ից (հետագայում փակվել է) և արմ-ից (2 կողմում ագուցված են արձանագրության քարը և 1549-ի քանդակազարդ խաչքար):

ՓԱՆՈՅԱՆ Վրույր Մարտիրոսի (1907–1977), դերասան: ՀԽՍՀ ժող. արտիստ (1961): 1930-ից՝ Ա. Խարազյանի անվ. շրջիկ, 1949–51-ին՝ Էջմիածնի, 1951-ից՝ Արտաշատի պետ. թատրոնների դերասան (Նազար՝ Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար», Մինոթոն՝ Շիրվանզադեի «Մորգանի խնամին», Իսայի՝ Գ. Սունդուկյանի «Խաթաբալա», Շմագա՝ Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», ևն): Նկարահանվել է կինոյում («Լալվարի որսկանը», 1966, «Հնձան», 1973, «Քառս», 1973, «Նահապետը», 1977, բոլորը՝ Հայֆիլմ):

ՓԱՆՈՍՅԱՆ Ալեքսանդր Գևորգի, **Ալֆասան** (1859–1919), բանաստեղծ, դրամատուրգ, թարգմանիչ: Գրել է նաև ֆրանս.: Հեղինակ է «Շողեր ու ցողեր» (1885) մանկ., «Այգեկութք» (1908), «Ազատ քնար: Հայրենաշունչ գրուածքներ» (1908) և այլ բանաստեղծությունների ժող-ների, «Թենկածուներ» (1901), «Մագնիս» (համահեղ., 1909) կատակերգությունների: Ֆրանս. է թարգմանել Մ. Նալբանդյանի, Մ. Պեշիկթաշլյանի, Պ. Դուրյանի, Գ. Զոհրապի, Ա. Չոպանյանի, Ե. Տեմիրճիպաշյանի գործերից:

ՓԱՆՈՍՅԱՆ Ալեքսանդր Գևորգի (ծ. 1949), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դ-ր (1986), պրոֆ. (1994): 2003-ից՝ Շվեդիայի դեղարույսերի ինստ-ի գիտ. նախագծերի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են բնական և ֆիզիոլոգ. ակտիվ միացությունների, նաև կենդ. և բուս. ծագման դեղանյութերի ուսումնասիրության խնդիրներին:

ՀՀ դեղաբանների ընկ-յան նախագահության (1996), Ջ. Սորոսի միջազգ. գիտ. հիմնադրամի (1995), Նյու Յորքի ԳԱ (1996) անդամ:

ՓԱՆՈՍՅԱՆ Գերասիմ Հարությունի (ծ. 1930), կենսաֆիզիկոս, մոլ. կենսաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1975), պրոֆ. (1976): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1981): Հարություն *Փանոսյանի* որդին: ՀՀ ԳԱԱ փորձառ. կենսբյան ինստ-ի տնօրեն (1983–86): 1986-ին ԵՊՀ-ում հիմնադրել է կենսաֆիզիկայի ամբիոն (մինչև 1999-ը՝ վարիչ): Աշխ-ները վերաբերում են բջջում կենսասինթետիկ շարժընթացների կարգավորմանը և կենսբ. ֆունկցիաների իրականացման մեջ առանձին կենսաքիմ. համակարգերի ու ենթաբջջ. կառուցվածքների դերին, կենսաճայնագիտ-յան հարցերին:

ՓԱՆՈՍՅԱՆ Զաբել Արամի (1893–1986), երգչուհի (սոպրանո): 1919-ին հանդես է եկել Արմենակ *Շահմուրադյանի* հետ (երգացանկում՝ «Քելեր, ցոլեր», «Հով արեք», «Կռունկ», «Անտունի», «Ես սարեն կուգայի», «Իմ չինարի յարը» ևն), 1920-ից՝ Բոստոնի օպեր. թատրոնում, առավել ճանաչվել է Ռոզինայի (Ջ. Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ») և Ջիլդայի (Ջ. Վերդիի «Ռիգոլետտո») դերերգերով:

ՓԱՆՈՍՅԱՆ Ժակ (1928–2012), ֆիզիկոս: ՀՀ ԳԱԱ պատվ. դ-ր (2003), պրոֆ.: 1976–93-ին՝ ֆրանս-գերմ. «Ֆրամատոմ» ֆիրմայի տնօրեն, փոխնախագահ, 1996–2012-ին՝ ՀՀ նախագահին կից ատոմ. էներգետիկայի անվտանգության խորհրդի անդամ: Աշխ-ները վերաբերում են ատոմ. ֆիզիկայի և ռեակտորների մշակման հարցերին:

ՓԱՆՈՍՅԱՆ Ժոզեֆ Ռեթևոսի (ծ. 1940), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1977), պրոֆ. (1999): Աշխ-ները վերաբերում են պինդ մարմնի օպտիկ. և լուսաէլ. հատկություններին, կիսահաղորդիչ-էլեկտրոլիտ սահմանում ցածր չափականության վիճակների ֆիզիկային, արև. էներգիայի լուսաէլեկտրաքիմ. և պինդ մարմնի փոխակերպիչների հետազոտման ու կիրառման հարցերին:

ՓԱՆՈՍՅԱՆ Կարապետ (1826–1905), հաս-քաղ. գործիչ, խմբ., հրապարակախոս, թարգմանիչ: Կ. Պոլսում *«Միութփի Էրճիասս»* (1859–62), *«Մանզումեի Էֆքեար»* (1866–96), «Վարագայի Հաւատիս» («Նորությունների թերթ», 1863–70), «Մօտա» (1874–75) հայատառ թուրք. պարբ-ների խմբ.: Հեղինակ է հայատառ թուրք. երկերի, թարգմ-յուններ է արել ֆրանս-ից:

ՓԱՆՈՍՅԱՆ Հակոբ Օննիկի (ծ. 1946), ԱԿՀ-երի բնագավառի գիտնական: Կալիֆոռնիայի համալսարանի փիլ-յան դ-ր (1981): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (2008): 1987-ից՝ «Ռոքուել» միջազգ. ընկ-յան «Շաթլ» տիեզերանավերի շարժիչների տատանումների կայունության և կառավարման գլխ. մասնագետ: Առաջարկել է շարժիչների մասնաբաժիններում առաջացող բարձր հաճախության տատանումները կառավարելու և շատ ցածր ջերմաստիճաններում դրանց կայունությունն ապահովելու նոր եղանակ: Ամերիկայի հայ գարտարագետների և գիտնականների ընկ-յան նախագահ (1988-ից):

ՓԱՆՈՍՅԱՆ Հարություն Կարապետի (1906–1973), մանրէաբան: ՀԽՍՀ-ում մանրէաբանության դպրոցի հիմնադիրներից: Կենսբ. գիտ. դ-ր (1945), պրոֆ. (1947): ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1956): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1966): Գերասիմ *Փանոսյանի* հայրը: ՀԽՍՀ ԳԱ մանրէաբանության ինստ-ի տնօրեն (1961–63): Առաջինն է նկարագրել ծծումբ և հրաքար օքսիդացնող որոշ բակտերիաներ, փշատենու պալարաբակտերիաները, հայտնաբերել ծիրանենու ազոտաբակտերի ակտիվարարները և մշակել նրանց կիրառման պայմանները: Ուսումնասիրել է Սևանա լճի և ջրից ազատված տարածքների ֆոսֆորաբակտերները:

ՓԱՆՈՍՅԱՆ Ռազմիկ Ստեփանի (ծ. 1964), քաղաքագետ: Քաղաքագիտ. գիտ. դ-ր (2003): 2013-ից՝ Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հայկ. բաժանմունքի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են միջազգ. քաղ-յանը, կոնֆլիկտաբանությանը, համեմատ. քաղաքագիտ-յանը, ԽՍՀՄ փլուզումից հետո Կովկասում ծագած ազգամիջյան բախումներին, Հայաստանի արդի շրջանի պատմությանը, ԼՂ-ի, Սփյուռքի խնդիրներին:

ՓԱՆՈՍՅԱՆ Սմբատ (1909–1995), գրող: Հեղինակ է «Անարձագանք քայլեր» (1949), «Սերը, որ գին չուներ» (1968) պատմվածքների ժող-ների, «Որ մրրկավ էին զատված» (1943) վեպի, «Հայկական վերք» (1959) երգիծ. վիպակի և այլ գործերի:

ՓԱՆՋԻԿՅԱՆ Գուրամ Իվանի (1933–1997), վրացի գրող: Հեղինակ է «Յոթերորդ երկինք» (1967), «Ակտիվ արևի տարի» (1978), «Պարույր» (1985–86), «Սատանայի անիվ» (1996) և այլ վեպերի: Հայ. հրատարակվել է «Ակնաբար» (1982) վեպը:

ՓԱՇԱ, Օսմ. կայսրությունում քաղաքաց. և զինվ. բարձրաստիճան պաշտոնյաներին տրվող տիտղոս: Հանրապետ. Թուրքիայում այն տրվել է գեն-ներին, վերացվել է 1934-ին: Օսմ. կայսրության փլուզումից (1918) հետո տիտղոսը գործածվել է Եգիպտոսում (մինչև 1952-ը) և Իրաքում (մինչև 1958-ը): Հայերը «Փ.» պատվանունով կոչել են ֆիդայապետներին՝ Սերոբ Փ., Անդրանիկ Փ. և ուր.:

ՓԱՇԱՅԱՆ Արարատ Ալեքսանդրի (ծ. 1951), քիմիկոս: Քիմ. գիտ. դ-ր (1999), պրոֆ.: Լեզվարան Ալեքսանդր Փաշայանի (1909–1965) որդին: Աշխ-ները վերաբերում են օրգ. նյութերի լուսաքիմ. ռեակցիաներին, կեղտաջրերի մաքրման և քիմ. արդ-յան 2-րդային հումքատեսակների համալիր վերամշակման խնդիրներին: Էկոլոգիայի և կենսագործունեության անվտանգության միջազգ. ակադ-ի անդամ (2003): ՌԴ Բրյանսկի մարզի հայ համայնքի նախագահ (2000-ից):

ՓԱՇԱՅԱՆ Արտավազդ Բարդուղիմեոսի (Բագրատի, 1910–1973), դերասան: ՀԽՍՀ ժող. արտիստ (1956): 1930 և 1933-ին՝ Թիֆլիսի Հայպետդրամայի, 1931-ին՝ Ղարաքիլիսայի (այժմ՝ Վանաձոր), 1932-ին՝ Երևանի բանվ., 1934-ից՝ Լենինականի (այժմ՝ Գյումրի) թատրոնների դերասան (Օսեփ՝ Գ. Սունդուկյանի «Քանդած օջախ», Վասկա Պեպել՝ Մ. Գորկու «Հատակում», Արթուր՝ Է. Վոյնիչի «Բոռը», Ֆաբրիցիո՝ Կ. Գոլդոնիի «Հյուրանոցի տիրուհին», ևն): Նկարահանվել է կինոյում («Ճանապարհ», «Հեղնար աղբյուր» ևն):

ՓԱՇԱՅԱՆ Բենուր Ալեքսանի (ծ. 1959), ըմբիշ, մարզիչ: ԽՍՀՄ (1982), Եվրոպայի (1981, 1982), աշխարհի (1988, 1983) չեմպիոն, աշխարհի գավաթակիր (1982): 1986–89-ին՝ Հայաստանի հունա-հռոմ. ոճի ըմբշամարտի հավաքականի գլխ. մարզիչ, 1999–2000-ին՝ ՀԱՕԿ-ի նախագահ:

ՓԱՇԱՅԱՆ Կարապետ (1864–1915), հասքաղ., ազգ–ազատագր. շարժման գործիչ, ակնաբույժ: 1895–ին Կ. Պոլսից (2 անգամ բանտարկվելուց հետո) անցել է Պարսկաստան. եղել է պալատ. բժիշկ (այստեղ նրան շնորհվել է Խան տիտղոս): 1903–06–ին Ալեքսանդրիայում իր միջոցներով հիմնադրել է դպրոց և տպարան: Երիտթուրք. հեղաշրջումից (1908) հետո վերադարձել է Կ. Պոլիս, ընտրվել օսմ. խորհրդարանի և Ազգ. ժողովի երեսփոխան: 1915–ին ձերբակալվել է, բանտարկվել Այաշի բանտում և սպանվել: Հեղինակ է «Ժողովրդի բարեկամները» (1909) երկի, նաև գիտ. ուսումնասիրությունների:

ՓԱՇԱՅՈՒԹՅՈՒՆ, նահանգ կամ մարզ (էյալեթ, վիլայեթ) Օսմ. կայսրությունում՝ *փաշայի* կառ–յան ներքո:

ՓԱՇԻՆՅԱՆ Գուրգեն Հմայակի (1933–2010), դատաբժիշկ–փորձագետ: Բժշկ. գիտ. դ–ր (1971), պրոֆ. (1974): ՌԴ գիտ. վաստ. գործիչ (1983): Առաջարկել է հյուսվածքների միկրոտարրերի միջոցով մահվան ժամկետները ճշտելու, մարդու ատամների և ստորին ծնոտի միջոցով դիակի ազգությունը, տարիքը, սեռը, անհայտ անձանց ինքնությունը հաստատելու մեթոդներ: Մոսկվայի դատաբժիշկների գիտ. ընկ–յան նախագահ (1972–81), «Դատական բժշկություն» (ռուս.) ամսագրի գլխ. խմբ–ի տեղակալ: ՌԴ բժշկատեխ. (2000), Միջազգ. ինտեգրատիվ մարդաբանության (2003) ակադ–ների անդամ:

ՌԴ «Պատվո շքանշան» (2006):

ՓԱՇԻՆՅԱՆ Էդվարդ Ռուբենի (1923–2004), երաժշտագետ, մանկավարժ: ՀՀ արվ. վաստ. գործիչ: Ստեղծել է հայ երաժշտության համապարփակ գերլադ. համակարգի տեսությունը, մշակել ժամանակակից հարմոնիայի դասընթացներ:

ՓԱՇԻՆՅԱՆ Լենա Սացակի (1931–1995), դերասանուհի: ՀԽՍՀ ժող. արտիստ (1989): 1947–ից՝ Կիրովականի դրամատիկ. թատրոնի դերասանուհի (Ռուզան՝ Մուրացանի «Ռուզան», Աննա՝ Գ. Տեր–Գրիգորյանի «Գարնան անձրև», Լեդի Մակբեթ՝ Վ. Շեքսպիրի «Մակբեթ», Տատիկ՝ Ա. Կասոնայի «Ծառերը կանգնած են մահանում», ևն):

ՓԱՇԻՆՅԱՆ Նիկոլ Վովայի (ծ. 1975), լրագրող, խմբ., քաղ. գործիչ: 1998–99–ին՝ «Օրագիր» պարբ–ի խմբ., 1999–2012–ին՝ *«Հայկական ժամանակ»* օրաթերթի հիմնադիր–խմբ.: ԱԺ պատգմ. (2012–ից), «Ելք» դաշինքի խորհրդարան. խմբակցության ղեկ. (2017–ից՝):

ՓԱՇՅԱՆ Կարապետ Պարգևի (ծ. 1946), նկարիչ: Հեղինակ է հիմնականում գրաֆիկ. աշխ–ների, նաև համամիութ. կփ–ի (1978), ծանրամարտի աշխարհի առաջնության (1983), ՀՀ անկախացման հանրաքվեի (1991), շախմատի համաշխ. օլիմպիադայի (1996), Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700–ամյակին նվիրված (2001, բոլորը՝ Երևան) գեղ. ձևավորումների, խառը տեխնիկայով արված գործերի («Հայելու առաջ», 1997, ևն): ՀՆՄ «Տարվա լավագույն աշխատանք» մրց. (1979):

ՓԱՇՎԱՔԻ ՔԱՌԱՄՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻ, ճարտ. հուշարձան Կարճկան գվռ–ի Փաշվաք գ–ում՝ Վանա լճի ափին: Կառուցվել է VI դ–ում (պահպանվել է արլ. մասը): Թաղածածկ դահլիճ է՝ երկայն. պատերին կից 5 զույգ որմնամույթերով, պայտաձև հատակագծով խորանի 2 կողմերում՝ ավանդատներով:

ՓԱՌԱԿԱ, ավան Գողթն գվռ–ում (այժմ՝ գ. Փառակա՝ Նախիջևանի ԻՀ Օրդուբադի շրջանում): Միջնադարում կառուցված եկեղեցիներից (Սբ Գևորգ, Սբ Նշան, Սբ Ստեփանոս ևն) կանգուն են Սբ Շմավոն (XII դ.) և Սբ Հակոբ Հայրապետ (XII–XIII դդ.) քառամույթ գմբեթավոր բազիլիկները: Փ. եղել է գրչության կենտրոն. այնտեղ ընդօրինակված և գրված ձեռագրերից պահվում են Մատեն–ում:

ՓԱՌԱԿԱՆ, *Կապսար*, լ–գագաթ Զանգեզուրի ու Մեղրու լ–շղթաների հանգուցակետում՝ ՀՀ Սյունիքի մարզում: Բարձր.՝ 3826 *մ*: Քարքարոտ է, ժայռոտ, տեղ–տեղ՝ լ–տունդրային բուսականությամբ:

ՓԱՌԱՆՁԵՄ (ծ. թ. անհտ–մոտ 369), Հայոց թագուհի: *Ամդովկ Սյունու* դուստրը: Ամուսնու՝ Գնել Արշակունու սպանությունից հետո դարձել է *Արշակ Բ*–ի երկրորդ կինը, հռչակվել «Մեծ Հայքի թագուհի» և «տիկնանց տիկին»: Արշակ Բ–ի՝ Տիզբոնում ձերբակալվելուց (368) հետո կառավարել է երկիրը: Ռազմ. օգնության և բյուզ. արքունիքում պատանդ որդուն՝ *Պապին*, Հայոց թագավոր ճանաչելու խնդրանքով պատվիրակություն է ուղարկել Կ. Պոլիս, իսկ ինքը 11–հզ–անոց զորքով ապաստանել է *Արտագերս* բերդում: Պարսկ. զորքերի դեմ 14–ամյա պաշտպ–յունից հետո Փ. գերեվարվել է Պարսկաստան և սպանվել *Շապուհ II*–ի հրամանով:

Փ–ի կերպարը մարմնավորվել է պատմավեպերում, *«Արշակ Բ»* օպերայում:

ՓԱՌԱՆՁԵՄ (Սաղաթելյան, օրիորդ. ազգանունը՝ Սահակյան, 1864–1915), դերասանուհի: Հանդես է եկել Պետրոս Ադամյանի, 1882–ից՝ Ստեփան Սաֆրազյանի խմբերում, ապա՝ Գրիգոր Աբրահամյանի հետ, նաև Սիրանույշի, Գևորգ Պետրոսյանի, Օլգա Սայսուրյանի, 1891–ից՝ Թիֆլիսի և Բաքվի թատերախմբերում (Շուշան, Էփեմիա՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», Խանում՝ Ա. Յագարելու «Խանում», Աննա Անդրեևնա՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», Գերտրուդ՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», ևն):

ՓԱՌԵՆ Ա. ԱՇՏԻՇԱՏՑԻ (ծ. թ. անհտ–352), Հայոց կաթողիկոս՝ 348–ից՝ *Աղբիանոսյանների* տոհմից: Համագործակցել է *Արշակունիների* հետ՝ կենտրոնացված ուժեղ թագավորություն ստեղծելու գործում:

ՓԱՌԻՍՈՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, հայկ. ավատապետություն X–XI դդ–ում: X դ–ի սկզբին *Մահակ Սևադան*, իր ժառանգ. տիրույթ *Փառնևս* գվռ–ին միացնելով Ուտիքի *Գարդման* և Ջորագետ գվռ–ները, հիմնադրել է Փառիսոսի իշխանությունը: X դ–ի կեսին նրա որդի *Սենեքերիմը* (Հովհաննես–Սենեքերիմ) այն հռչակել է թագավորություն (կենտրոնը՝ Փառիսոս ավան): Հետագայում Փ. թ–յան տարածքն ընդգրկվել է *Խաչենի իշխանության* կազմում:

ՓԱՌՆԱԿԵՑ (Տեր–Սարգսյան Մակար, 1850–1912), դրամատուրգ: Հեղինակ է «Խոլերա», «Նիսիա», «Դասախոսություն», «Կկակղես, կուտես», «Ապուշներ», «Երկու կրակի մեջ» և այլ վոդևիլների ու կատակների, որոնք նաև բեմադրվել են:

ՓԱՌՆԱԿԵՍ II (լատ.՝ Pharnaces, մ. թ. ա. մոտ 97– 47), *Բոսպորի թագավորության* (մ. թ. ա. 63–48), ապա՝ Պոնտոսի (մ. թ. ա. 48–47) արքա: Փորձել է նվաճել Փոքր Ասիան, բայց 47–ին շատ արագ պարտվել է Հուլիոս Կեսարին, այդ ճակատամարտի վերաբերյալ է ասված (լուր է ուղարկել Սենատ)՝ «veni, vidi, vici» («եկա, տեսա, հաղթեցի»):

ՓԱՌՆԵՍ, Քուստ–ի *Փառնես*, *Փառիսոս*, գվռ *Արցախ* նահանգ–ում: Ընդգրկել է ներկայի Սևանի լ–շղթայի արլ. փեշերը, Շամքոր գետակի վերին ավազանը, Ադրբեջանի Շամքորի շրջանի հվ. մասը: Կենտրոնը Փառիսոս ավանն էր, որի անունով գվռ–ը կոչվել է նաև Փառիսոս: X դ–ում եղել է *Փառիսոսի թագավորության* կենտր. գվռ–ը:

ՓԱՍԱԴԵՆԱ, *Փասադինա* (Pasadena), ք. ԱՄՆ–ի Կալիֆոռնիա նահանգ–ում, Լոս Անջելեսի արվարձանը: Բն.՝ 144,5 հզ. (2010):

Հայերը Փ–ում հաստատվել են 1920–ական թթ–ին: Ներկայում ապրում է շուրջ 10 հզ. հայ: Գործում են Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, Հովսեփյան, Սահակ–Մեսրոպյան ՀԲԸՄ–ի ամենօրյա վարժարանները, Լևոն և Հասմիկ Թավլյան մանկապարտեզը ևն: 2015–ին կառուցվել է Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշարձան:

ՓԱՍԻԱՆԱԲԱՂ, բադերի ընտանիքի թռչուն: Երկ.՝ մոտ 70 *սմ*: Պոչի միջին փետուրները երկար են: Տարածված է Եվրասիայում և Հս. Ամերիկայում: Որսաթռչուն է:

ՓԱՍԻԱՆՆԵՐ (Phasianidae), հավանմանների կարգի թռչունների ընտանիք: Միջին մեծության թռչուններ են: Երկ.՝ 12,5 *սմ* (լոր)–30,0 *սմ* (կանաչ փասիան), կ. զ.՝ 80–120 *գ*–6 *կգ*: Հայտնի է 180 (Եվրասիա, Աֆրիկա և Ամերիկա) տեսակ, ՀՀ–ում՝ 6 (թուրաջ, լոր, կաքավ, վայրի հնդկահավ ևն): Լավ վազում են, թռչում դժկամությամբ: Որսաթռչուն են: Որոշ տեսակներ ընտանեցվել են: 21 տեսակ և 2 ենթատեսակ գրանցված են ԲՊՄՄ Կարմիր գրքում:

«ՓԱՍՏ», հաս–քաղ. օրաթերթ (2016–ից, Երևան): Գլխ. խմբ.՝ Աշոտ Աղաբաբյան:

ՓԱՍՏԱԹՂԹԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գիտություն փաստաթղթի և փաստաթղթահաղորդակց. գործունեության մասին: Փ. փաստաթուղթն ուսումնասիրում է որպես տեղեկատվության աղբյուր և սոցիալ. հաղորդակցության միջոց: Հիմնադրել է բելգիացի մատենագետ Պոլ Օտլեն (1868–1944): 1990–ական թթ–ից Փ. լայնորեն կիրառվում է մատենագիտ–յան, գրադարանագիտ–յան, գրքագիտ–յան, արխիվագիտ–յան և թանգարանագիտ–յան ոլորտներում:

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ, 1. իրավ. նշանակության ակտերի տարբեր տեսակներ (օր.՝ կտակի սահմանված ձև, բարձրագույն կրթության վկայական ևն): 2. Անձը կամ որոշակի իրավունքը հաստատող Փ. (օր.՝ կենսաթոշակ. հավաստագիր, վարորդ. իրավունք ևն): 3. Որևէ պատմ. իրադարձության, փաստերի մասին գրավոր վկայություն: 4. Տվյալների նյութ. կրիչը (թուղթ, կինո– և լուսաժապավեն, մագնիս. ժապավեն ևն)՝ նրա վրա գրանցված տեղեկությամբ, որը նախատեսված է տարածաժամանակ. փոխանցման համար: Փ–երը կարող են պարունակել տեքստեր, պատկերներ, ձայն ևն:

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ, V դ–ի պատմիչ: Ըստ Ստեփան *Սյունեցու*՝ «Բուզանդ» մականունը բաղկացած է «բու» և «զանդ» հնդեվրոպ. արմատներից և նշանակում է եղելությունների, զրույցների մեկնիչ: Փ. Բ–ի «Պատմութիւն Հայոց» երկն ընդգրկում է Խոսրով Կոտակից (330–338) մինչև Հայաստանի առաջին բաժանումը (387): Պատմագիտ. և բանասիր. մեծ արժեք ունի երկում զետեղված «Պարսից

պատերազմը» ժող. ավանդավեպը: Առաջին անգամ հրատարակվել է «Բիւզանդրան պատմութիւն…» խորագրով (1730, Կ. Պոլիս):

ՓԱՐԱՄԱԶ (Սարգսյան Սատթեոս, 1863–1915), ազգ–ազատագր. շարժման գործիչ, գրող: Կազմակերպել է Կովկասի փոխարքա Գ. Ս. *Գոլիցինի* ահաբեկումը: Երիտթուրք. հեղաշրջումից (1908) հետո անցել է Օսմ. կայսրություն: 1914–ի հուլիսի 14–ին թուրք. իշխանությունները 19 հնչակյանների խմբում ձերբակալել են նաև Փ–ին և կախաղան բարձրացրել Կ. Պոլսում:

ՓԱՐԱՋԱՆՅԱՆ Օսիկ (Հովհաննես) Հայկազի (1917–1996), դաշնակահար, մանկավարժ: ՀՀ վաստ. արտիստ (1964): ԵՊԿ պրոֆ. (1984): Հանդես է եկել որպես մենակատար և նվագակցող, եղել հայ արդի կոմպոզիտորների մի շարք դաշնամուր. երկերի առաջին կատարողը:

ՓԱՐԱՋԱՆՈՎ, Սերգեյ (Փարաջանյանց Սարգիս) Իոսիֆի (1924–1990), կինոռեժ.: ՀԽՍՀ և Ուկր. ԽՍՀ ժող. արտիստ (1990): 1951–ից՝ Կիևի կինոստուդիայի ռեժ. («Անդրիեշ», 1955, Յ. Բազելյանի հետ, «Առաջին տղան», 1959, «Ուկրաինական ռապսոդիա», 1961, «Մոռացված նախնիների ստվերները», 1965, «Լեգենդ Սուրամի բերդի մասին», 1984, Դ. Աբաշիձեի հետ, «Աշուղ Ղարիբ», 1988, երկուսն էլ՝ Վրացֆիլմ): «Նոան գույնը» (1969, Հայֆիլմ) կինոնկարով հաստատվել է Փ–ի արվ–ի բացառիկ ինքնատիպությունը: Նկարահանել է նաև կարճամետրաժ ֆիլմեր («Նատալյա Ուժվի», «Ոսկե ձեռքեր», երկուսն էլ՝ 1957, «Հակոբ Հովնաթանյան», 1968, «Փիրոսմանի», 1985): Հեղինակ է կինոսցենարների, գեղանկարչ. գործերի (գծանկար, կոլաժ, մանրանկար ևն):

Հայկ. «Ոսկե ծիրան» կփ–ն (2005) սահմանել է Փ–ի անվ. մրց. («Փարաջանովյան Թալեր»): ՀԽՍՀ (1988), Ուկր. ԽՍՀ (1990) Պետ. և այլ կփ–երի մրց–ներ:

ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ԹԱՆԳԱՐԱՆ, հիմնադրվել է 1988–ին Երևանում, բացվել՝ 1991–ին, հիմնադիր–տնօրենն՝ Զավեն Սարգսյան: Թանգարանում պահվում է 1500 ցուցանմուշ, 700–ը՝ մշտ. ցուցադրությամբ: Ներկայացված են գծանկարներ, էսքիզներ ֆիլմերի համար, տիկնիկներ, գլխարկներ, կոլաժներ, նաև Թբիլիսիի բնակարանից բերված կահ–կարասին ու անձնական իրերը: Հուշասրահում վերականգնվել են Կիևի և Թբիլիսիի նրա բնակարանների հարդարանքի որոշ մասեր:

ՓԱՐԱՎՈՆ (< եգիպտ. փեր–օ – բառացի՝ մեծ տուն), սկզբն. նշանակությամբ՝ թագավոր. պալատ: Հին Եգիպտոսի թագավորների ժամանակակից անվանումը, մ. թ. ա. XVI դ–ից՝ թագավորի տիտղոս: Փխբ. իմաստով՝ հսկա, ահռելիա:

ՓԱՐԱՔԱՐԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ, IX դ–ի ճարտ. հուշարձան ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար գ–ի մոտակայքում՝ Երևան–Վաղարշապատ մայրուղու վրա: Վերանորոգվել է 1950–ական թթ–ին և 2004–ին (նաև մատաղատունը և հովվատունը): Զանգակատունը կառուցվել է 1984–ին, վերաբացվել է 1992–ին:

ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ Սարգարիտա Սերգեյի (ծ. 1948), նկարչուհի, գոբելենագործ: Հեղինակ է գոբելենների («Ատոմ՝ պատերազմ, թմ խաղաղություն», 1985, «Խավարում», 1998, «Քարերը ժողովելու ժամանակն է», 2004, ևն), գրաֆիկ. գործերի («Կովախնձոր», 2000, «Ս. Հռիփսիմե, Գայանե և Շողակաթ» (2003), «Նատյուրմորտ», 2004, ևն), գրքերի նկարազարդումների (Մետաքսեի «Ծառ զկոտրենք», Լ. Սարգսյանի «Ճոճահավ», ևն):

ՓԱՐԵՄՈՒԶՈՎ. Նատալյա Ֆեոդորի (1907–1991), ճարտ.: Լևոն *Վարդանովի* կինը: Հեղինակ է Բաթումի, Ախալցխայի հատակագծերի ու կառուցապատումների, Գորիսի մանկավարժ. ինստ–ի, Էջմիածնի Զվարթնոց տաճարի վերականգնման և այլ նախագծերի: Համահեղինակ է (ամուսնու հետ) Վ. Ի. Լենինի արձանի (1940, Երևան, մինչև 1990–ը՝ կանգուն) պատվանդանի (1937–40, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1970, քանդվել է 1996–ին):

ՓԱՐԹՈՆՆԵՐ (<լատ. pars, ուղիղ ձևը՝ partis –մաս), *հադրոնի* բաղադրիչ տարրերի ընդհ. անվանումը: Ի հայտ են գալիս մեծ շարժման քանակի փոխանցման բազմակի շարժընթացներում: Փ–ի մոդելը 1969–ին առաջարկել է Ռ. *Ֆեյնմանը*: Փորձն. հետազոտություններով Փ. նույնացվել են քվարկների և գլյուոնների հետ:

ՓԱՐԻԶ (Paris), Ֆրանսիայի մայրաքաղաքը Սեն գետի ափին: Բն.՝ 2,274 մլն (արվարձաններով՝ շուրջ 12 մլն, 2014): Տրանսպորտ. խոշոր հանգույց է. ունի 3 օդանավակայան (Շառլ դե Գոլ, Օռլի, Լե Բուրժե): Եվրոպ. նշանակության գործարար կենտրոն է: Կան մեքենաշին., քիմ., թեթև, սննդի արդ–յան և այլ ձեռն–ներ: Գործում են բազմաթիվ թանգարաններ (Լուվրի, Օրսե, Գիմե ևն), թատրոններ («Գրանդ օպերա», «Օպերա–Բաստիլիա», «Կոմեդի Ֆրանսեզ») և բուհեր (այդ թվում՝ *Սորբոնի համալսարանը*): Ճարտ. համալիրներից են Արքայական պալատը (Սիտե կղզում, 1783–86), որը ներառում է Փարիզի Աստվածամոր տաճարը (1163–1257), Սենտ Շապել մատուռը (1243–48), Ժամացույցի աշտարակը (1370), Կոնսիերժերի պալատը (XIV դ.), Սենի ձախ ափին են Հաշմանդամների տունը (1671–76)՝ Սեն Լուի դեզ Ինվալիդ տաճարով (1680–1706), Պանթեոնը (1758–90), Մարսյան դաշտը (ժամանակակից հատակագիծը՝ 1908–1928)՝ Էյֆելյան աշտարակով (1889, բարձր.՝ 306 մ), Վանդոմյան սյունը (1806–10), Կոմունարների պատը՝ Պեր լա Շեզ գերեզմանատանը (1909), ևն:

Փ–ում են ՅՈՒՆԵՍԿՕ–ի, Միջազգ. առևտրի պալատի և բազմաթիվ այլ միջազգ. կազմ–յունների կենտր. գրասենյակները: Անցկացվել են II (1900) և VIII (1924) օլիմպ. խաղերը:

Փ. հիմնադրվել է գալլական պարիզիների ցեղի բնակավայր Լյուտեսի տեղում (Սիտե կղզի), որը հիշատակում է Հուլիոս Կեսարը մ. թ. ա. I դ–ում: Մ. թ. III–IV դդ–ում կոչվել է Պարիզիի (լատ.՝ Parisii, հետագայում՝ ֆրանս.՝ Paris): 497–ից Փ. ֆրանկների իշխանության տակ էր, եղել է Խլոդվիգի նստավայրը: Կառոլինգների օրոք եղել է կոմսության կենտրոն: 885–886–ին պաշարել են նորմանները: Կապետինգների գահ բարձրանալով (987) դարձել է ֆրանս. թագավորության մայրաքաղաքը: XVII դ–ի 2–րդ կես–XVIII դ. Փ. դարձել է գիտ–յան, գրկ–յան և արվ–ի համաշխ. կենտրոն:

Փ–ում հայերը (հիմնականում՝ վաճառականներ) բնակություն են հաստատել XV դ–ում: Մինչև XVIII դ–ի վերջը հայերը փոքրաթիվ էին և կազմակերպված համայնք չունեին: 1798–ին Փ–ի Արլ. կենդանի լեզուների դպրոցում կազմակերպվել է հայագիտ–յան ամբիոն: 1846–ից Սևրում սկսել է գործել Սամուել–Մուրատ վարժարանը: 1840–ական թթ–ից Փ–ի բուհերում սովորել են հայ երիտասարդներ (հիմնականում՝ բժշկություն. 1843–1914–ին կրթություն է ստացել 122 հայ երիտասարդ), որոնք անմասն չեն մնացել մայրաքաղաքի հաս–քաղ. կյանքից: 1849–ին Փ–ում հիմնադրվել է «Արարատյան ընկերությունը» [Նահապետ Ռուսինյան, Հովսեփ Շիշմանյան (Ծերենց) և ուր.], որը քարոզել է հայ ժողդ–ի ազգ. ազատագրության գաղափարը: 1855–ին հրատարակվել են Փ–ում առաջին հայ. պարբ–ները՝ «Արեւելք», «Մասեաց աղաւնի»: 1855–59–ին Փ–ի Գոնել արվարձանում գործել է Հայկազյան վարժարանը: XIX դ–ի 60–ական թթ–ին փարիզահայերը կառուցել են «Սբ Էջմիածին» մատուռը: XIX դ–ի վերջից Փ–ում ստեղծվել են հայ հաս. կազմ–յուններ՝ Հայկազյան ուսումնասիրաց ընկ–ը (1879), Հայ ուսանող. միությունը (1888), Աշխատավոր. միությունը (1904), Ֆրանսահայ տիկնանց միությունը (1913) և ուր., որոնք կազմակերպել են համայնքի ազգ. կյանքը: 1902–ին Փ–ի Ժան Գուժոն փողոցում կառուցվել է Փ–ում առաջին հայկ. Սբ Հովհաննես Մկրտիչ մայր եկեղեցին (բարերար Ա. Մանթաշյանի միջոցներով):

Փ–ի հայ համայնքն առավել աշխուժացել է 1920–ական թթ–ի կեսից, երբ Մեծ եղեռնից փրկված արևմտահայ գաղթականների մի մասը, հասնելով Մարսել, տարածվել է երկրով մեկ, բնակություն հաստատել նաև Փ–ում և նրա շրջակայքում: Փ–ում հայերի թվի աճին զուգընթաց (1914–ին՝ շուրջ 2,5 հզ.,1925–ին՝ 25–30 հզ.) ավելացել են նաև հաս., կրթ. կազմ–յունները՝ Հայ բժշկ. միությունը (1920), Հայ նախկին ռազմիկների միությունը (1922), Ֆրանսահայ գրողների ընկերակցությունը (1923), Հայ չափահաս երկսեռ որբերի միությունը (1925), ՀՕԿ–ի մասնաճյուղը (1925), Նուպարյան մտնդ–ն (1929), Մարի Նուպար ուսանող. տունը: 1926–ին կազմակերպվել է հայ արվեստագետների «Անի» խմբակցությունը: 1928–ից Փ–ում են հաստատվել Դպրոցասեր տիկնանց ընկ–ը (գործել է մինչև 1937–ը) և Դպրոցասեր տիկնանց վարժարանը: 1930–ին քաղաքի Լատ. թաղամասի կենտրոնում Հ. Սամուելյանի նախաձեռնությամբ բացվել է «Արևելյան գրախանութը» (գործում է ցայսօր):

Փ. եղել է հայ մշակույթի կենտրոններից: Երկար տարիներ այստեղ են ապրել և ստեղծագործել Էդգար Շահինը, Կոմիտասը, Արշակ Չոպանյանը, Ավետիք Իսահակյանը, Ալեքսանդր Շիրվանզադեն, Երվանդ Քոչարը, Մարտիրոս Սարյանը:

Հետպատերազմյան տարիներին ստվարացել է համայնքը (ի հաշիվ Մերձ. Արևելքի երկրներից գաղթածների): 1980–ական թթ–ին Փ–ում և շրջակա ք–ներում (Ալֆորվիլ, Բանյո, Կլամար, Շավիլ, Իսի լե Մուլինո, Բուա Կոլոմբ, Առնուվիլ լե Գոնես, Վերսալ ևն) բնակվել է շուրջ 80 հզ. հայ: Հետագա տարիներին համայնքի ստվարացման միտումը շարունակվել է նաև Հայաստանից գաղթածների հաշվին: Ներկայում Փ–ում և արվարձաններում հայերի թիվը շուրջ 100 հզ. է: Գործում են Սբ Պողոս–Պետրոս (Ալֆորվիլ), Վարագա Սբ Խաչ (Առնուվիլ լե Գոնես), Սբ Գրիգոր Լուսավորիչ (Շավիլ), Սբ Մարիամ Աստվածածին (Իսի լե Մուլինո) եկեղե-

ցիները, Դպրոցասեր տիկնանց վարժարանը (Ռենսի), Սբ Մեսրոպ (Ալֆորվիլ) և Թարգմանչաց (Իսի լե Մուլինո) ամենօրյա վարժարանները: ՀԲԸՄ, ՀՄԸՄ, ԹՄՄ, Համազգ. մշակութ. միության, «Հայաստան» համահայկ. հիմնադրամի Փ–ի մասնաճյուղերը, Ֆրանսահայ մշակութ. միությունը, Ֆրանսահայ երիտասարդ. միությունը, «Երկիր և մշակույթ» կազմյունը, ՀԲԸՄ «Ալեք Մանուկյան» մշակութ. կենտրոնը, հայագիտ. հիմնարկներ: Կան մշակույթի տներ, գրախանութներ, պատկերասրահներ: Գործում են «Դիմակ», «Նարեկ Դուրյան» թատերախմբերը, «Սիփան–Կոմիտաս» երգչախումբը, «Նաիրի», «Նավասարդ», «Սասուն», «Շուշի» (մանկ.) պարախմբերը, «Քատրա» երաժշտ. միությունը, 1950–ական թթ–ից՝ Հայ դեկորատիվ արվ–ի թանգարանը: Ֆրանսահայ արվեստագետների մեծ մասն ապրել և ստեղծագործել է Փ–ում: Առավել հայտնի են գրողներ Արթյուր Ադամովը, Անրի Թրուայան (Թորոսյան), նկարիչներ Գառզուն, Զարեհ Մութաֆյանը, կինոռեժ. Անրի Վեռնոյը, կոմպոզիտոր Ժորժ Կառվարենցը, շարունակում են ստեղծագործել երգիչ Շառլ Ազնավուրը, նկարիչ Ժանսեմը և ուր.: Քաղ. ակտիվ գործունեություն է ծավալում նախկին ԱԺ պատգմ. և նախարար Պատրիկ Դևեջյանը:

Տարբեր տարիների Փ–ում կազմակերպվել են հայկ. ցուցահանդեսներ՝ «Հայկական արվեստը Ուրարտուից մինչև մեր օրերը» (1970), «Մարտիրոս Սարյան» (1982), «Հայկական Փարիզը» (1990), «Կիլիկիայի թագավորությունը» (1993), «Հայաստանը Արևմուտքի և Արևելքի միջև» (1996, Ազգ. գրադարան), «Անի–1000–ամյա մայրաքաղաք» (2001), «Սուրբ Հայաստան» (2008), Հայ ոսկերիչների աշխ–ների (2013):

2003–ին Փ–ի «Կանադայի հրապարակում» կանգնեցվել է Կոմիտասի արձանը:

Պեր լա Շեզ գերեզմանատանն ամփոփված են Փ–ի հայ առաջնորդների աճյունները: Այնտեղ էր թաղված նաև զորավար Անդրանիկը, որի աճյունը 2000–ին տեղափոխվել է Հայաստան: Մահարձանը Պեր լա Շեզում պահպանվել է որպես հուշարձան: Տես նաև *Ֆրանսիա* հոդվածի հայերին վերաբերող մասը:

«ՓԱՐԻԶ», քաղ., ազգ., բանասիր. պարբերաթերթ (1860–63, Փարիզ): Տնօրեն–խմբ.՝ Աբրահամ Մուրադյան:

ՓԱՐԻԶԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ, արևելագիտ–յան ուս. հաստատություն: Հիմնադրվել է 1795–ին Փարիզում: Դասավանդել են թուրք., պարսկ., արաբ., հայ.: 1968–84–ին եղել է *Սորբոնի* կազմում (Universite Paris III – Sorbonne Nouvelle): 1798–ին ինստ–ում հիմնադրվել է հայագիտ–յան ամբիոն, մուտքի գլխամասում ոսկե տառերով գրվել «Հայք» բառը: Դասավանդում են արևմտահայ., արևելահայ., գրաբար, հայոց պատմություն, հայ գրկ–յան պատմություն, հայ արվ–ի պատմություն, գրչարվ. և վիմագրություն: 1993–ին ամբիոնին կից ստեղծվել է Հայագիտ. ուսմանց ընկ., որը հրատարակում է *«Ռևյու դյու մոնդ Արմենիեն»* հայագիտ. տարեգիրքը: Ուս. հաստատությունն ավարտել են Ն. Ռուսինյանը, Հ. Աճառյանը, Ս. Տեր–Ներսեսյանը, մի շարք ժամանակակից հայագետներ: Վարիչներ՝ Հ. Շ. Զրպետյան, Պ. Ֆլորիվալ, Է. Դյուլորիե, Օ. Կարիեր, Ա. Մեյե, Ֆ. Մակլեր, Ժ. Դյումեզիլ, Ֆ. Ֆեյդի, Ժ. Պ. Մահե, Տ. Գույումջյան, Ա. Տոնապետյան (1991–ից):

ՓԱՐԻԶԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ, Ֆրանսիայի ԳԱ–ի, ավելի ճիշտ՝ Բնական ԳԱ–ի (հիմն.՝ 1666, մինչև 1793–ը՝ Թագավոր. ԳԱ), որը մտնում էր Ֆրանսիայի ինստ–ի մեջ, տարածված ոչ պաշտոն. անվանումը: 2015–ին ուներ 150 իսկական, 300 թղթ., 120 արտ. անդամներ:

ՓԱՐԻԶԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ 1946, տեղի է ունեցել հուլիսի 29–հոկտ. 15–ը: Քննարկել է ԵՀՊ–ում հաղթանակած հակահիտլեր. դաշինքի պետությունների հաշտության պայմանագրերը Եվրոպայում Գերմանիայի նախկին դաշնակիցների (Իտալիա, Բուլղարիա, Հունգարիա, Ռումինիա, Ֆինլանդիա) հետ: Հավանություն է տվել այդ պետությունների հետ նախօրոք պատրաստված հաշտության պայմանագրի հոդվածների մեծ մասին: Ստորագրել են 1947–ի փետր. 10–ին Փարիզում, ուժի մեջ են մտել սեպտ. 15–ին:

ՓԱՐԻԶԻ ԿՈՄՈՒՆԱ, 1. **1789–94**, Փարիզի քաղաքային ինքնավարության մարմին XVIII դ–ի Ֆրանս. հեղ–յան ժամանակ: 1793–94–ին հեղ. իշխանության կարևոր մարմին էր՝ Պ. Գ. Շոմետի, Ժ. Էբերի և այլոց գլխավորությամբ: 2. **1871**, ապստամբած փարիզցիների իշխանության մարմին: Մարտի 18–28–ին տապալել է Ա. *Թիերի* կառ–յունը: Մայիսի 28–ին կառավար. զորքերը ջախջախել են Փ. կ.:

ՓԱՐԻԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Փարիզում տպագրված հայ. առաջին գիրքը Ֆրանչիսկոս Ռիվոլայի «Բառագիրք հայոց»–ի վերահրտ–յունն է (1633): Մինչ այդ՝ 1538–ից Ֆրանս. տարբեր գրքերում հիշատակություններ կան հայերի ու հայ–ի մասին: XIX դ–ի 1–ին կեսին հայ. գրքեր են տպագրվել Կայսեր., Դ. Դյուպրեի, Ազգ. տպարաններում: XIX դ–ի 2–րդ կեսին և XX դ–ում Փարիզում հայ. գրքեր ու պարբ–ներ են տպագրել և՛ հայ, և՛ ֆրանսիացի տպագրիչները: 1857–62–ին գործել է Կարապետ *Շահնազարյանի* («Շար հայ պատմագրաց», մատենաշար, ևն), 1854–1862–ին՝ Ճանիկ *Արամյանի* (Եզնիկ Կողբացու, Գրիգոր Նարեկացու, Ծերենցի, Մ. Նալբանդյանի, Պ. Դուրյանի, Գ. Սրվանձտյանի, Ա. Գալֆայանի, Գ. Այվազովսկու և ուր. գործեր, այլ բնույթի գրկ., մի շարք պարբ–ներ), 1900–20–ին՝ Կ. Ներսեսյանի (նաև *«Անահիտ»* հանդեսը) տպարանները: Հայտնի էին նաև Ֆ. Ճարյանի, Պ. Եղիկյանի, Պ. Միհաևի, S. Տողարամաճյանի, «Մասիս», «Տարոն», «Այգ», Մուրատյան վարժարանի, «Անահիտի», «Բանասերի» և հայկ. այլ տպարաններ: XIX դ–ում և XX դ–ի սկզբին հայ. գրքեր են տպագրվել Վ. Ռեմքեի, Ա. Բուրդինեի, Շ. Նորելի, «Մորիս և որդի», Շարդոնի, Շիլլերի, «Է. Թոունո և ընկ.» և ֆրանս. այլ տպարաններում: 1970–ական թթ–ից գործել են *«Էդերնոնի»*, «Գիրք», «Սևիկ պրեսս», «Աստրիդ» և այլ տպարաններ: 1855–ից լույս են տեսել Փարիզի հայ. 1–ին պարբ–ները՝ «Արեւելքը» և «Մասեաց աղաւնի»–ն: Մինչև 1970–ը հրատարակվել է շուրջ 170 անուն պարբ., որոնցից մի քանիսը (*«Յառաջ»* ևն) ունեցել են սեփ. տպարան, իրականացրել գրահրտչ. գործունեություն: Ներկայում Փարիզում լույս են տեսնում *«Հայապրան»* (1947–ից), *«Աշխարհ»* (1960–ից), «Կամք» (1985–ից), *«Նոր Յառաջ»* (2009–ից), *«Նուվել դ'Արմենի»* (1992–ից) պարբ–ները, մի շարք գիտ. հանդեսներ, կրոն. պաշտոնաթերթեր:

ՓԱՐԻԶԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ 1919–20, հրավիրել են (1919–ի հունվ. 18–1920–ի հունվ. 21–ը) ԱՀՊ–ում հաղթող տերությունները՝ պարտված երկրների հետ հաշտության պայմանագրերի նախապատրաստման համար: Պայմանագրեր է պատրաստել Գերմանիայի, Ավստրիայի, Բուլղարիայի, Հունգարիայի և Թուրքիայի (տես *Սևրի հաշտության պայմանագիր 1920*) հետ: Հիմն. հարցերը որոշել են Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, ԱՄՆ–ն: Խորհրդ. Ռուսաստանը չի հրավիրվել: Խորհրդաժողովը հավանություն է տվել *Ազգերի լիգայի* կանոնադրությանը:

ՀՀ–ն Փ. հ. խ–ին չի հրավիրվել, սակայն 1919–ի փետր–ին հայկ. 2 պատվիրակություն (Ազգ. պատվիրակությունը՝ Պողոս *Նուբարի*, ՀՀ պատվիրակությունը՝ Ավետիս *Ահարոնյանի* գլխավորությամբ) դիմել է դաշնակից տերություններին՝ հայերի ազգ. պահանջները հարգելու խնդրանքով: Ֆրանսիայի առաջարկությամբ՝ փետր. 12–ին հայ պատվիրակները ներկայացրել են «Հայերի պահանջների վերաբերյալ հուշագիրը», որը պատճաշ ուշադրության չի արժանացել: Այդուհանդերձ, Փ. հ. խ. դե ֆակտո ճանաչել է (19.01.1920) ՀՀ–ն՝ նրան, սակայն, որևէ իրական օգնություն չցուցաբերելով:

ՓԱՐԻԶԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 1856, կնքվել է մի կողմից՝ Ռուսաստանի, մյուս կողմից՝ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Օսմ. կայսրության, Սարդինիայի, Ավստրիայի, Պրուսիայի միջև. ավարտել է 1853–56–ի *Ղրիմի պատերազմը*: Ռուսաստանը Թուրքիային է վերադարձրել Կարսը (Սևաստոպոլի դիմաց) և գրաված մյուս տարածքները, իսկ հաղթողներն իրենց զորքերը դուրս են բերել Ղրիմի թ–կղզուց: Ռուսաստանը Մոլդովային է զիջել Դանուբի գետաբերանը և Հվ. Բեսարաբիայի մի մասը: Սև ծովը հայտարարվել է չեզոք: Ռուսաստանը և Թուրքիան զրկվել են այնտեղ ռազմ.նավատորմ ունենալու իրավունքից: Երաշխավորվել է Սերբիայի, Մոլդովայի և Վալախիայի ինքնավարությունը:

ՓԱՐԻԶՅԱՆ ԿԱՆԱՉ, պղնձի (II) ացետատ–արսենիտ՝ $Cu(CH_3COO)_2 \cdot 3Cu(AsO_2)_2$: Կանաչ բյուրեղ., ջրում չլուծվող փոշի է, լուծվում է թթուների և ամոնիակի լուծույթներում: Հրատեխ. բաղադրանյութերի բաղադրիչ է, առնետասպան, միջատասպան, ընկասպան: Կիրառվում է որպես գունանյութ կանաչ ներկերի համար՝ բացառությամբ ծով.նավերի համար կիրառվող ներկերի:

ՓԱՐԻՄԵՅԻՆԵՐ (երբ.՝ փերուշիմ – բաժանվածներ, զատյալներ), Հին Հուդայում (մ. թ. ա. II–մ. թ. II դդ.) հաս–կրոն. հոսանքի ներկայացուցիչներ: Ի տարբերություն սադուկեցիների՝ հրեական ավանդույթներն ու ծեսերը համարել են բանավոր Թորա, որը, ինչպես գրավոր Թորան (*Մովսիսական օրենքներ*), ունի աստված. ծագում: Փ. միաժամանակ ձգտել են մեղմել Օրենքի պահանջները՝ այն համապատասխանեցնելով իրենց ժամանակին, որի համար կատարվել են Թորայի բազմաթիվ մեկնություններ: Ավետարանում Փ. *Հիսուս Քրիստոսի* ընդդիմախոսներն են, որտեղ նա բացահայտում է Փ–ի կեղ–

ծավորությունը: Փխբ. իմաստով՝ «Փ.» նշանակում է կեղծ բարեպաշտ:

ՓԱՐՈՍ, աշտարակատիպ կառույց, տեղակայում են ծովի մեջ մտած ափամասերի, ժայռերի, առափնյա ծանծաղուտների վրա, գետաբերաններում: Ծառայում է որպես նավագնացության կողմնորոշիչ: Փ-ները սարքավորում են լուսաօպտիկ. համակարգով, նաև ազդանշան. այլ միջոցներով (շչակ, ձայնաճառագայթիչ ևն), ռադիոտեխ. սարքավորումներով (ռադիոփարոս) ևն:

«ՓԱՐՈՍ», բանասիր. տարեգիրք (1872–76, Մոսկվա, 5 գիրք): Խմբ–հրտ.՝ Զարմայր Մսերյան:

«ՓԱՐՈՍ», ազգ., գր., քաղ. պարբերաթերթ (1897–98, 1901–02, Կահիրե): Խմբ–ներ՝ Հաբրություն Ալփիար, Տիգրան Արփիարյան:

«ՓԱՐՈՍ», ազգ., հաս., գր. ամսաթերթ (1910–12, Պարտիզակ): Պարտիզակի «Երիտասարդաց քրիստոնեից» ընկ–յան հրտ–յուն: Խմբ–ներ՝ Հակոբ Ալոճյան, Գրիգոր Մխալյան:

«ՓԱՐՈՍ», հաս–քաղ. պարբերաթերթ (1924–41, Սոֆիա, ապա՝ Պլովդիվ): ՌՍԿ հրտ–յուն: Խմբ–ներ՝ Տիգրան Մարտիրոսյան, Բ. Մազլյան, Մ. Գոչունյան, Հակոբ Մարթայան:

«ՓԱՐՈՍ», հաս–քաղ. պարբերաթերթ (1931–99, Ախալքալաք՝ հայ., 1 էջը՝ վրաց.): Մինչև 1991–ը՝ Վրաստանի ԿԿ Ախալքալաքի շրջկոմի և ժողպատգմ–ների շրջխորհուրդների, ապա՝ Ախալքալաքի շրջ. վարչության պաշտոնաթերթ: Մինչև 1964–ը՝ տարբեր անվանումներով:

«ՓԱՐՈՍ», ազգ., երգիծ. պարբերաթերթ (1951–52, Բեյրութ): Խմբ–ներ՝ Բարկեն Տեր–Գևորգյան, Պետրոս Քիրեճյան:

«ՓԱՐՈՍ», ազգ., հաս., գր. ամսաթերթ (1977–ից, Նիկոսիա՝ հայ., հուն.): Խմբ.՝ Երան Կույումճյան:

«ՓԱՐՈՍ», ազգ., գր., քաղ., մշակութ. երկշաբաթաթերթ (1984–ից, Լոս Անջելես): Հիմնադիր–խմբ.՝ Սուրեն Բուրսալյան:

«ՓԱՐՈՍ», ՀԿ, հաշմանդամների կրթության և մշակույթի զարգացման կենտրոն: Հիմնադրվել է 2001–ին Երևանում: Նպատակը հաշմանդամների շահերի պաշտպանն է, տարբեր ծրագրերի միջոցով նրանց հաս. կյանքի մեջ ներգրավումը, նոր մասնագիտ–յունների ուսուցումը, զբաղվածության ապահովումը, հաս. կարծիքի բարելավումը: Մասնաճյուղեր ունի ՀՀ բոլոր մարզերում:

«ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ», պատմաբան–սիր. հանդես (1879–81, Մոսկվա): Խմբ–ներ՝ Զարմայր և Սուքիաս Մսերյաններ:

ՓԱՐՉԵՆ, գետ Հայկ. լ–աշխարհում, Արաքսի աջ վտակը: Երկ.՝ մոտ 43 *կմ*: Սկիզբը է առնում Զորի լ–ներից (Հայկ. Պարի համակարգ), հոսում է խոր ձորով դեպի հս և միախառնվում Արաքսին: Մնումը ձնաանձրևային է:

ՓԱՐՊԻԻ ԾԻՐԱՆԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ, V դ–ի ճարտ. հուշարձան ՀՀ Արագածոտնի մարզի Փարպի գ–ում: Միանավ եկեղեցի, աղոթասրահը (4,15 x 8,75 *մ*) արլ–ից ավարտվում է ներսից՝ կիսաշրջանաձև, դրսից՝ հնգանիստ խորանով: Փայտե ծածկը VI–VII դդ–ում փոխարինվել է քարե թաղով, որի համար ներսի երկայն. պատերին կցվել են 3 զույգ որմնամույթեր: Հետագայում վերածվել է բերդի: Գյուղի արլ. կողմում Սբ Թարգմանչաց քառախորան գմբեթավոր եկեղեցին է (VII դ.): Կանգուն են պատերը:

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ (Փարսադանով) Բորիս Քրիստափորի (1925–1997), կոմպոզիտոր, ջութակահար: Էստ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1967): 1975–88–ին՝ Էստոնիայի ֆիլհարմոնիայի գեղ. ղեկ.: Հեղինակ է «Մասունցի Դավիթ» սիմֆ. պոեմի (1950), սիմֆոնիաների (1958–81), «Ապրեցեք դարերով» ռեքվիեմի (1962), «Աղ» օպերայի (1972), նաև կոնցերտների, կամեր. անսամբլների, սոնատների և այլ գործերի:

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ Հայկ Եսայու (1902–1981), մարզ. գործիչ, մանկավարժ: Մանկավարժ. գիտ. թեկնածու (1956), դոցենտ (1957): ՀԽՍՀ ֆիզ. կուլտուրայի և ս. վ. գ. (1966): ՖԿՀՊԻ հիմնադիր–տնօրեն (1945–53): Աշխ–ները վերաբերում են ֆիզ. կուլտուրայի և սպորտի տեսության և մեթոդիկայի հիմնախնդիրներին:

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ Ռաֆայել Սերգոյի (1923–1973), բժշկագիտ–յան պատմաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1967), պրոֆ. (1967): ՀԽՍՀ վաստ. բժիշկ (1963): Աշխ–ները վերաբերում են Հայաստանի բժշկագիտ–յան պատմության և առողջապ–յան զարգացման, բժշկ. էթիկայի և բարոյագիտ–յան հարցերին:

ՓԱՐՎԱՆԱ, լիճ Ձավախքի բարձրավանդակում՝ Ձավախքի և Սամսարի լ–շղթաների միջև՝ 2074 *մ* բարձր–յան վրա: Մնումը ստորերկրյա և ձնաանձրևային է: Առլճն մակարդակը մայիսին է: Նոյեմբ–ից ապրիլ սառցակալում է: Փ–ից սկիզբ է առնում *Փարվանա* գետը:

ՓԱՐՎԱՆԱ, Թափարվան, գետ Ձավախքի բարձրավանդակի հս–ում, Կուրի աջ վտակը: Սկիզբ է առնում *Փարվանա* լճից: Երկ.՝ 74 *կմ*, ավազանը՝ 2280 *կմ*^{2}, ջրի միջին ծախսը (գ. Խերթվիս)՝ մոտ 19 *մ*^{3}/*վ*, տարեկան հոսքը՝ 597 մլն *մ*^{3}: Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով:

ՓԱՐՔ (Park) Ռոբերտ Էզրա (1864–1944), ամերիկացի սոցիոլոգ: Չիկագոյի սոցիոլոգ. դպրոցի հիմնադիրներից: Աշակել է սոցիալ. բնապահպանության հայեցակարգ: Գաղթը դիտարկելով որպես կոլեկտիվ վարքի ձև՝ Փ. ներմուծել է «լուսանցքային (մարգինալ) անհատ» հասկացությունը:

ՓԱՈՒՆԴ (Pound) Էզրա Լուիս (1885–1972), ամերիկացի բանաստեղծ: Ամերիկ. մոդեռնիզմի հիմնադիրը և գլխ. տեսաբանը: 1924–45–ին և 1958–ից՝ Իտալիայում: Հեղինակ է «Դիմակներ» (1912), «Հյու Սելվին–Մորեոլի» (1920), «Երգեր» (1917–68) և մոդեռնիստ. բանաստեղծությունների այլ ժող–ների: Հայ. հրատարակվել է «Տեսանող աչքը: Բանաստեղծություններ» (2014) ժող–ր:

ՓԱՓԱԶ Չաոլզ Հրաչ (1918–2017), ռադիոֆիզիկոս: Պրոֆ. (1955): ԱՄՆ ԳԱԱ (1956), ՀՀ ԳԱԱ արտ. (1974) անդամ: Աշխ–ները վերաբերում են էլեկտրամագնիս. ճառագայթման, անտենաների տեսության և ռադիոալիքների տարածման հարցերին: Աշակել է գրավիտացիոն դաշտում էլեկտրամագնիս. ալիքների տարածման տեսություն, արտածել լիցքավորված մասնիկների շարժման ռելյատիվիստ. հավասարում: Օգտվելով Վիկտոր *Համբարձումյանի* ինվարիանտության սկզբունքից՝ լուծել է անհամասեռ միջավայրում ռադիոալիքների տարածման մի շարք խնդիրներ:

Բոլոնիայի ակադ–ի (1984), Ամերիկայի ֆիզ., մաթ. ընկ–ների, Էլեկտրատեխնիկայի և էլեկտրոնիկայի ճարտարագետների ինստ–ի անդամ:

ՓԱՓԱԶՅԱՆ Արթուր (Հարություն) Կարապետի (ծ. 1954), դաշնակահար: 1984–2005–ին՝ ԱՄՆ–ում: Ամերիկայի (1985–ին՝ մենահամերգ Կառնեգի Հոլում) և Եվրոպայի երկրներում հանդես է եկել Յ. Ս. Բախի, Լ. վան Բեթհովենի, Ֆ. Լիստի, Ֆ. Շոպենի, Ս. Վ. Ռախմանինովի, Մ. Ս. Պրոկոֆևի, Կ. Դեբյուսիի երկերի կատարումներով: Համերգները հաճախ ավարտում է ***Կոմիտասի*** մանրանվագներով:

Այսրկովկաս. IV մրցույթի 1–ին մրց. (1972, Բաքու), դաշնակահարների միջազգ. մրցույթների (Բ. Սմետանայի անվ., 2–րդ մրց., 1974, Գրադեց Կրալով, Վ. դի Սիտտայի անվ., 1–ին մրց., 1979, Լիսաբոն, Ֆ. Շոպենի անվ., 3–րդ մրց., 1980, Վարշավա) դափնեկիր:

ՓԱՓԱԶՅԱՆ Արթուր Վարդանի (1962–2002), ՀՀ բանակի գեն–մայոր (2002): ԼՂՀ ՊԲ ռազմ. կապի հիմնադիրներից: ՀՀ վաստ. գյուտարար (2001): 1992–94–ին՝ ՊԲ կապի, 2000–02–ին՝ ՀՀ ԶՈՒ կապի զորքերի, կապի և ինքնաշխատ կառավարման համակարգի վարչությունների պետ: 1989–94–ին մասնակցել է ՀՀ սահմանամերձ շրջանների ինքնապաշտպ. և Արցախի ազատագր. մարտերին:

ՀՀ և ԼՂՀ «Մարտական խաչ» 2–րդ աստիճանի շքանշաններ, «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» հուշամեդալ, «Շուշիի ազատագրման համար» մեդալ:

ՓԱՓԱԶՅԱՆ (ամուսն. ազգանունը՝ Պեզիրճյան) Արուսյակ (Մարիամ) Մեսրոպի (1841–1907), հայ առաջին պրոֆեսիոնալ դերասանուհին: 1857–59–ին՝ Կ. Պոլսում՝ Սրապիոն Հեքիմյանի խմբի, 1861–63–ին՝ Արևելյան, 1863–ից՝ Վասպուրականի թատրոնների դերասանուհի (Սանդուխտ՝ Թ. Թերզյանի «Սանդուխտ կույս», Փառանձեմ՝ Ռ. Սեթեֆճյանի «Վարդան Մամիկոնյան», Անտիգոնե՝ Սոֆոկլեսի «Անտիգոնե», Էլիզ՝ Մոլիերի «Ագահը», ևն): 1866–ին (Մտեփան Էքշյանի հետ) ստեղծել է սեփական թատերախումբ: Քույրը՝ **Աղավնի** Փ. (ամուսն. ազգանունը՝ Վալիտեյան, 1844–1913), դերասանուհի: Մասնակցել է քրոջ և այլ խմբերի ներկայացումների (Տիկին դը Ժերվեզ, Քեննետի՝ Ա. Դյումա–հոր «Կճեպագործ», «Կատրին Հովարդ», ևն):

ՓԱՓԱԶՅԱՆ Դենիս Նահապետի (ծ. 1931), պատմաբան, հաս. գործիչ: Պատմ. գիտ. դ–ր (1966), պրոֆ. (1971): ՀՊՄՀ պատվ. դ–ր:1975–78–ին՝ Ամերիկայի հայկ. համագումարի տնօրեն, 1973–79–ին՝ տնօրենների խորհրդի նախագահ: Միչիգանի Դերբոն համալսարանի Հայագիտ. հետազոտությունների կենտրոնի հիմնադիր–տնօրեն (1985–ից): Աշխ–ները վերաբերում են Ռուսաստանի XIX դ–ի, ԽՍՀՄ, Մերձ. Արևելքի ու հայոց պատմության հարցերին, ինչպես նաև Հայկ. հարցի ու Հայոց ցեղասպանության լուսաբանմանը:

Կինը՝ **Մերի Փ.**, Նյու Հևենի Հվ. Քոնեքթիքութի պետ. համալսարանի 11–րդ ռեկտորը (2011), 2016–ից՝ Սան Խոսե համալսարանի ռեկտոր (3–րդ կին ռեկտորն է այդ համալսարանի 160–ամյա պատմության մեջ): ՀՊՄՀ պատվ. դ–ր:

ՓԱՓԱԶՅԱՆ Թորոս Ավետիսի (ծ. 1946), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1986), պրոֆ. (1991): Աշխ–ները վերաբերում են ռեզոնանս. միջավայրերի հետ լազեր.

հզոր ճառագայթի փոխազդեցության փորձարար. հետազոտմանը, լազեր. համակարգերի մշակմանը:

ՓԱՓԱԶՅԱՆ Կարապետ, XIX դ–ի արևմտահայ առաջին կոմպոզիտոր–դիրիժորներից: 1846–66–ին՝ Կ. Պոլսի Արամյան թատրոնի նվագախմբի հիմնադիր–ղեկ.: Ներկայացումներում օգտագործել է իր գրած քայլերգները:

ՓԱՓԱԶՅԱՆ Հակոբ (Ձեկ, 1878–1957), քանդ.: 1922–ից՝ Նյու Յորքում: Մասնակցել է Նյու Յորքի Շրջ. դատարանի, Վաշինգտոնի Արխիվների շենքերի քանդակազարդմանը: Հեղինակ է նաև խորհրդանշ. արձանների («Անթև հաղթանակ», «Ամերիկայի ոգին» ևն), փոքրաչափ հարթաքանդակների՝ հին արլ. թեմաներով («Սաբայի թագուհին», «Շեհերազադե» ևն): «Հավիտենական պայքար» խմբաքանդակը ՀԱՊ–ում է:

ՓԱՓԱԶՅԱՆ Հակոբ Դավթի (1919–1997), արևելագետ, պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1968), պրոֆ. (1972): Աշխ–ները վերաբերում են XV–XVIII դդ–ի Արլ. Հայաստանի սոցիալ–տնտ. և քաղ. պատմությանը: Հրատարակել է պարսկ., արաբ., թուրք. պատմ. վավերագրերի բնագրեր, հայ. և ռուս. թարգմ–յուններ («Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», 1956–59, 1968):

ՓԱՓԱԶՅԱՆ Համբարձում (1830–մ. թ. անհտ), բանաստեղծ: Դորպատի հայ ուսանողների ինքնուրույն և թարգմ. բանաստեղծությունների (դորպատյան բանաստեղծություններ) շարքում («Քնար Հայկական», 1868, ժող.) հայտնի է եղել Փ–ի «Զքեզ որդիք արաճեան կոչէ Հայաստան» հայրենասիր. բանաստեղծությունը:

ՓԱՓԱԶՅԱՆ Հրաչ (1882–1960), հասքաղ. գործիչ: 1919–ին Կ. Պոլսում աջակցել է *«Նեմեսիս»* գործողության կազմակերպման աշխ–ներին: 1926–57–ին Հալեպում վարել է կուս. (ՀՅԴ բյուրոյի անդամ), հանրային և պետ. (Սիրիայի խորհրդարանի անդամ) գործունեություն:

ՓԱՓԱԶՅԱՆ Մեսրոպ (Մարտիրոս) Հայրապետի (1823–1891), մանկավարժ, գրող, հրապարակագիր, հաս., թատեր., եկեղեց. գործիչ: Վրթանես և Վահան *Փափազյանների* հայրը: Իրանի և Հնդկաստանի հայոց թեմի առաջնորդ. տեղապահի փոխանորդ (1882): Հիմնադրել է դպրոցներ, որբանոցներ, կրթալուս. ընկ–ներ: 1879–ին Թավրիզում ստեղծել է պարսկահայ առաջին թատերախումբը:

ՓԱՓԱԶՅԱՆ Վահան, **Կոմս** (1876–1973), ազգ–ազատագր. շարժման գործիչ: Մեսրոպ *Փափազյանի* որդին, Վրթանես *Փափազյանի* եղբայրը: 1906–07–ին ղեկավարել է Կովկասից Վան ռազմամթերք փոխադրելու գործը: Երիտթուրք. հեղաշրջումից (1908) հետո ընտրվել է օսմ. խորհրդարանի անդամ՝ Վանից: ԱՀՊ–ի ժամանակ միացել է Ռուբեն *Տեր–Մինասյանի* խմբին: 1917–ին ընտրվել է Արևմտահայ ազգ. խորհրդի նախագահ, 1919–ին՝ Փարիզի հաշտության խորհրդաժողովի Ազգ. պատվիրակության անդամ: Հեղինակ է «Իմ յուշերը» (գիրք 1–3, 1950–57), «Խոնարհի հերոսներ» (հ. 1–3, 1950–56) գրքերի:

ՓԱՓԱԶՅԱՆ Վահրամ Քամերի (1888–1968), դերասան: ՀԽՍՀ (1932), ՎԽՍՀ (1933), Ադրբ. ԽՍՀ (1935), ԽՍՀՄ (1956) ժող. արտիստ: 1909–ից (տարբեր տարիների) խաղացել է Կ. Պոլսի, Զմյուռնիայի, Բաքվի, Թիֆլիսի հայկ. թատերախմբերում, Հայաստանի Առաջին պետթատրոնում, Թիֆլիսի, Բաքվի հայկ. թատերախմբերում, Լենինգրադի «Պասսաժ», Պուշկինի անվ. և այլ թատրոններում: 1954–ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասան: 1932–41–ին հանդես է եկել Ռիգայի, Տալլինի, Փարիզի և այլ ք–ների թատրոններում: Փ–ի կատարող. արվ–ին բնորոշ են կերպարի խոր ճանաչողությունը, մտքի և զգացմունքի, արտաքին ու ներքին պլաստիկ լուծումների ներդաշնակությունը, անսպառ հմայքը, բեմ. կատարյալ վարպետությունը [Օթելլո, Համլետ, Լիր՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», «Համլետ», «Լիր արքա», Քին՝ Ա. Դյումա–հոր «Քին», Կորրադո՝ Պ. Ջակոմետտիի «Ոճրագործի ընտանիքը», Օսվալդ՝ Հ. Իբսենի «Ուրվականներ», Աբելա՝ Լ. Շանթի «Հին աստվածներ», Արբենին՝ Մ. Յ. Լերմոնտովի «Դիմակահանդես», Պրոտասով՝ Լ. Ն. Տոլստոյի «Կենդանի դիակ», Մեք Գրեգոր՝ Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» (վերջին դերը), ևն]: 1917–20–ին Էդնեստո Վահրամ անունով նկարահանվել է Ա. Խանժոնկովի ֆիլմերում (Յալթա): Հեղինակ է «Հետադարձ հայացք» (հ. 1–2, 1956–57), «Սրտիս պարտքը» (1959), «Իմ Օթելլոն» (1964), «Համլետը ինչպես տեսա» (1968), «Լիր արքա» (1971) գրքերի:

ՓԱՓԱԶՅԱՆ Վրթանես Մեսրոպի (1864–1920), գրող, հաս–քաղ. և մշակույթի գործիչ, խմբ., ազգագրագետ, մանկավարժ: Մեսրոպ *Փափազյանի* որդին, Վահան *Փափազյանի* եղբայրը: 1894–97–ին՝ «Շաւիղ», 1901–ին՝ «Վտակ», 1911–12–ին՝ «Դարապաղ» պարբ–ների խմբ.: Ազգ–ազատագր. հայացքների համար Թուրքիայում հեռակա մահվան է դատապարտվել: Հեղինակ է «Պատկերներ թիւրքահայոց կեանքից» (1891), «Պատմուածքներ թիւրքահայերի կեանքից» (1904) պատմվածքների ժող–ների, «Էմմա» (1895), «Ասի» (1903), «Ալէմգիր» (1904) վեպերի, «Գինեգործի աղջիկը» (1891) և այլ պատմվածքների, «Ժայռը» (1907) և այլ դրամաների, «Հայ բոշաներ» (1899) ազգագր., պատմագիտ. և այլ աշխ–ների: Առաջինն է գրել հայ գրկ–յան ամբողջ. պատմությունը:

ՓԱՓԱԶՅԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ, հիմնադրել է Պերճ Ֆազլյանը (1959–71–ին՝ ղեկ.) 1959–ին Բեյրութում: 1960–ից՝ Վահրամ Փափազյանի անվ., 1972–ից խումբը ղեկավարել է Գրիգոր Սաթամյանը, 1975–ից՝ Վաչե Ատրունին: Բեմադրություններից են՝ Գ. Տեր–Գրիգորյանի «Գարնան անձրև» (1963), «Մուսա լեռան 40 օրը» (ըստ Ֆ. Վերֆելի, 1965), Լ. Շանթի «Հին աստվածներ» (1969), «Մեծապատիվ մուրացկաններ» (ըստ Հ. Պարոնյանի, 1972), Ժ. Ֆեյդոյի «Կասկածը կնոջ մտքի մեջ է», Է. Ռոստանի «Սիրանո դը Բերժըրակ» (1975) և այլ պիեսներ:

ՓԱՓԿԱՄԱՐՄԻՆՆԵՐ (Mollusca), **փափկամորթներ**, անողնաշար կենդանիների տիպ: Մեծ մասի մարմինը ծածկված է խեցիով: Փորի կողմում կա մկան. գերաճ: Հայտնի է 2 ենթատիպ (կողանյարդավորներ և խեցիավորներ), ավելի քան 130 տեսակ: Ապրում են ծովերում (մեծ մասը), քաղցրահամ ջրամբարներում և ցամաքում: Բազմաթիվ Փ. ձկների, թռչունների և կաթնասունների կեր են, որոշ տեսակներ (ոստրեներ, միդիաներ, կաղամարներ, սանրիկներ) աճեցնում են, օգտագործում սննդի մեջ: Մարգարտախեցիներից ստանում են մարգարիտներ: Մի շարք ցամաք. Փ. վնասում են մշակաբույսերը, մի մասը (օր.՝ նավաորդը)՝ նավերի ստորջրյա մասերը և ջրատեխ. կառույցները: Շատ Փ. մակաբույծ որդերի միջանկյալ տերեր են:

ՓԱՓՈՎԻՉ (Պապովիչ) Անդրեաս (1909–1958), բժիշկ, ֆիզիոլոգ, փիլ.: 1840–ական թթ–ի 1–ին կեսից Կ. Պոլսում զբաղվել է գործն. բժշկությամբ և հռչակվել ժող. բժիշկ: Նկարագրել է կենս. կարևոր օրգանները և նրանց ֆունկցիաները, ընապաշտության և մարդաբանության տեսանկյունից մեկնաբանել մարդու բնույթը: Ժամանակի ֆիզիոլոգիայի, հոգեբ–յան և բժշկության նվաճումների հիման վրա պարզաբանել է հոգեֆիզիոլոգիականի հիմնախնդիրները, հոգեկանը բացատրել գլխուղեղի և նյարդ. համակարգի ֆիզիոլոգ. գործունեությամբ: Փ–ի փիլ. հայացքներին բնորոշ են դեիզմը, էվոլյուցիոնիզմը, մասամբ՝ մարդաբան. մատերիալիզմը:

ՓԱՓՈՒԿ ՇԱՆԿՐ (< ֆր. chancre – խոց), սուր վարակիչ *վեներական հիվանդություն*, փոխանցվում է հիմնականում սեռ. ճանապարհով: Հարուցում են ստրեպտոբացիլները: Բնորոշվում է արտաքին սեռ. օրգանների վրա առաջացած ցավոտ փափուկ խոցերով:

ՓԵԹԱՐԱ ՄԱՆՈՒԿ (1880–ական թթ.–1920), ազգ–ազատագր. շարժման մարտիկ, ֆիդայի: Եղել է Գևորգ Չավուշի, Կոր յունի, Ռ. Տեր–Մինասյանի զինակիցը: 1915–ին մասնակցել է Մշո դաշտի, Սասունի ինքնապաշտպ. կռիվներին, 1918–ին՝ Սարդարապատի ճակատամարտին: ՀՀ ստեղծումից (1918) հետո պայքարել է Արլ. Հայաստանի տարածքում հաստատված կովկաս. թաթարների հակահայկ. գործողությունների դեմ, օժանդակել արևմտահայ գաղթականների վերաբնակեցմանը: Զոհվել է Կողբի ազատագրման համար թաթարների դեմ կռվում:

ՓԵԼԵՇՅԱՆ Արտավազդ Աշոտի (ծ. 1938), կինոռեժ.: ՀՀ ժող. արտիստ (2005): ՀՀ (1978), ՌԴ (1995) արվ. վաստ. գործիչ: Նկարահանել է «Մարդկանց երկիրը» (1966), «Սկիզբ» (1967), «Մենք» (1969), «Երկրաբնակները» (1970), «Տարվա եղանակները» (1975), «Մեր դարը» (1982), «Վերջ» (1992), «Կյանք» (1993) և այլ վավերագր. ֆիլմեր: Հեղինակ է կինոսցենարների, նկարահանվել է «Մենք ենք, մեր սարերը» գեղ. ֆիլմում (Ռնազ, 1969, Հայֆիլմ): Փ–ի «Տարածական մոնտաժ» (1974) երկը նոր խոսք է կինոյի մոնտաժի տեսության մեջ: Երևանի պատվ. քաղաքացի (2017):

ՀՀ Պետ. մրց. (1985), «Սր Մեսրոպ Մաշտոց» շքանշան (1996), «Պատվո շքանշան» (2018), Միջազգ. կփ–ի Մեծ (2000, Փարիզ), «Ոսկե ծիրան» կփ–ի «Փարաջանովյան Թալեր» (2006, Երևան) մրց–ներ, ՀՀ վարչապետի հուշամեդալ (2012):

ՓԵՀԼԻՎԱՆՅԱՆ Զորջ (ծ. 1964), դիրիժոր, ջութակահար: 1975–ից՝ ԱՄՆ–ում, 1995–ից՝ Փարիզում: Որպես դիրիժոր՝ հանդես է եկել 1987–ից՝ Նյու Յորքի Կառնեգի Հոլում, ղեկավարել է նաև Փարիզի, Մոնտե Կառլոյի, Ս. Պետերբուրգի, Մոսկվայի, Չիկագոյի ֆիլհարմոնիկ նվագախմբերը: Երկացանկում՝ Ա. Վիվալդիի, Յ. Ս. Բախի, Լ. վան Բեթհովենի, Յ. Բրամսի, Պ. Ի. Չայկովսկու, Կոմիտասի, Ա. Խաչատրյանի և ուր. ստեղծագործություններից:

Միջազգ. մրցույթի 1-ին մրց. (1991, Բզանսոն), ՀՀ ՄՆ ոսկե մեդալ (2014):

ՓԵՆՋԱՓ, **Փանջաբ** (5 գետերի երկիր), աշխարհագր. և պատմ. մարզ Հվ. Ասիայում, Ինդոս-Գանգես. հարթավայրի հս. մասը: Ողոգվում է Ջելամ, Չինաբ, Ռավի, Բիաս և Սաթլեջ գետերով: Համաշխ. քաղաքակրթության ինագույն կենտրոններից է (Խարապպա, Մոհենջոդարո ք-ներ ևն): XVI դ-ում Փ-ում սկսվել է սիքհերի շարժումը. կազմավորվել է նրանց պետությունը (1765–1849): Անգլո-սիքհ. պատերազմի հետևանքով այն գրավել են անգլիացիները: 1947-ին Փ-ի տարածքը բաժանվել է Հնդկաստանի և Պակիստանի միջև. այժմ Արլ. Փ. Հնդկաստանի Հանրապետության նահգ է, Արմ. Փ.՝ Պակիստանի պրովինցիա:

ՓԵՆՋԱԲՅՈՆԵՐ, հնդարիական ժողտ Պակիստանում (76 մլն, 2010) և Հնդկաստանում (29,1 մլն, 2001), պատմ. ***Փենջաբի*** հիմն. բնակչությունը: Լեզուն՝ փենջաբի: Հնդկաստանի Փ. հիմնականում հինդուական են, Պակիստանինը՝ սուննի մահմեդական:

ՓԵՆՍԻԼՎԱՆԻԱ (Pennsylvania), նահնգ ԱՄՆ-ի հս-արլ-ում: Տարածքը՝ 117,4 հզ. *կմ²*, բն.՝ 12,8 մլն (2013): Վարչ. կենտրոնը՝ Հարիսբերգ:

ՓԵՆՍԻԼՎԱՆԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, 1. ԱՄՆ-ի հնագույն բուհերից (մասնավոր): Հիմնադրել է Բենջամին Ֆրանկլինը 1740-ին Ֆիլադելֆիայում՝ որպես անվճար դպրոց բանվորների երեխաների համար: 1779-ից՝ համալսարան: 2015-ին ուներ ավելի քան 21 հզ. ուսանող: 2. ԱՄՆ-ի պետ. խոշորագույն համալսարաններից: Հիմնադրվել է 1855-ին Լյուիսթաունի մոտ՝ որպես ֆերմեր. դպրոց: 1862-ից՝ գղտ. քոլեջ, 1953-ից՝ համալսարան: 2015-ին ուներ ավելի քան 90 հզ. ուսանող:

ՓԵՇԱՎԱՐ, ք. Պակիստանում՝ Բարա գետի ափին, Հս-արմ. սահմանամերձ պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,44 մլն (2010): Գղտ. շրջանի առևտր. կենտրոնն է: Ենթադրվում է, որ հիմնադրվել է մ. թ. ա. I հզ-ամյակի վերջին:

ՓԵՇՏԻՄԱԼՃՅԱՆ, **Փեշտըմալճյան**, Գրիգոր (1774–1837), բառարանագիր, քերական, փիլ., մանկավարժ: Հեղինակ է «Քերական լեզուագիտութիւն» (1827), «Քերականութիւն հայկազեան լեզուի» (1829) ուս. ձեռնարկների, «Դիմառնութիւն ի չարչարանս Քրիստոսի փրկչին մերոյ» (հրտ.՝ 1845), «Լուսաշաւիղ, որ է բացատրութիւն Նիկիական հանգանակին...» (հրտ.՝ 1848), «Տրամաբանութիւն կամ Արուեստ բանական» (գրաբար, հրտ.՝ 1854) աշխ-ների, «Բառգիրք հայկազեան լեզուի» (հ. 1, 2, հրտ.՝ 1844, 1846) անավարտ բառարանի, որը հետագայում լրացրել և հրատարակել են նրա աշակերտները:

ՓԵՇՏԻՄԱԼՃՅԱՆ Տիգրան (1837–1894), հաս-բաղ. գործիչ, բժիշկ, հրապարակախոս: 1880-ական թթ-ին՝ Կ. Պոլսի «Միացյալ ընկերություն հայոց» բարեգործ. կազմ-յան գործադիր մարմնի նախագահ: Հեղինակ է Հայկ. հարցի, «Սովելոց կեդրոնական հանձնաժողովի» գործունեության, հայկ. դպրոցների պատմության վերաբերյալ աշխ-ների (անտիպ):

ՓԵՏՐԱԽՈՍ (Stipa), **սարի սմբուլ,** դաշտավայրակազգիների (հացազգիներ) ընտանիքի բազմամյա, հազվադեպ՝ միամյա չորասեր խոտաբույսերի ցեղ: Հայտնի է ավելի քան 200 տեսակ՝ 2 կիսագնդերի տաք և մերձարևադարձ. մարզերում, մասնակի՝ արևադարձ. լեռներում, ՀՀ-ում՝ 13՝ գրեթե բոլոր մարզերում: Մի շարք տեսակներ տափաստանի բուսականության հիմն. տարրերից են: Ճիմ առաջացնող կերաբույս է:

ՓԵՏՐԱԿԵՐՆԵՐ (Mallophaga), միջատների ընտանիք: Երկ.՝ 1–11 *մմ*: Հայտնի է մոտ 2500 տեսակ: Թռչունների, հազվադեպ՝ կաթնասունների մակաբույծներ են: Մսվում են թեփոտվող էպիթելով և նրա ածանցյալներով (փետուր, աղվամազ, մազեր): Ընտանի կենդանիների զանգված. ախտահարման դեպքում կենսունակությունը նվազում է:

ՓԵՏՐՎԱՐ (< լատ. Februarius), օրացուց. տարվա 2-րդ ամիսը (28 կամ 29 օր): Կոչվել է հինհռոմ. ստորերկրյա թագավորության աստված Ֆեբրուսի անվամբ: Ձմռան վերջին ամիսն է:

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ 1921, զինված ելույթ Խորհրդ. Հայաստանի իշխանությունների դեմ: Ուղղորդել և ղեկավարել է ՀՅԴ-ն: Պատճառը հացի ու մյուս ապրանքների բռնագրավումներն էին, զանգված. բանտարկությունները (ձերբակալվել էր մոտ 2000 մարդ) և գնդակահարությունները, բանակի սպայական կազմի աքսորումը, Հայկ. հարցի անտեսումը ևն: Փետր. 16-ից ապստամբները մի շարք շրջաններում իշխանությունը վերցրել են իրենց ձեռքը, 18-ին մտել են Երևան, որտեղ ստեղծվել է ***Հայրենիքի փրկության կոմիտե*** (ՀՓԿ) և ժամանակավոր կառ-յուն՝ Սիմոն ***Վրացյանի*** գլխավորությամբ: Ռազմ. գործողություններն ընթացել են փոփոխակի հաջողությամբ, իսկ Վրաստանում հեղ-յան հաղթանակից (փետր. 25) հետո, կազմավորվել է Երևանի ուղղության զորախումբ (հրամ.՝ Մ. Վելիկանով)՝ ապստամբությունը ճնշելու համար: Հաշտության առաքելությամբ Թիֆլիսից Երևան է եկել Հովհաննես ***Թումանյանը***, որին, սակայն, չեն լսել: Նույն օրը (մարտի 20) ՀՓԿ-ի անունով ստացվել է Ս. ***Օրջոնիկիձեի*** վերջնագիրը՝ զենքը վայր դնելու պահանջով: Ապրիլի 2-ին Խորհրդ. ԶՈՒ մտել են Երևան: Ապստամբները մի քանի հզ. քաղաքաց. բնակչության հետ հեռացել են Զանգեզուր, ապա՝ Պարսկաստան:

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ 1917, դեմոկրատ. հեղ-յուն Ռուսաստանում [Պետրոգրադ, փետր. 23–27 (մարտ 8–12)], որի հետևանքով տապալվել է միապետությունը: Սկսվել է սոցիալ-տնտ. և քաղ. ճգնաժամի կտրուկ սրման պատճառով՝ կապված ԱՀՊ-ում Ռուսաստանի պարտությունների, տնտ-յան քայքայման, ապրանքների պակասի, ազատ. ուժերի ակտիվացման հետ: Ստեղծվել է երկիշխանություն՝ Բանվորների և զինվորների պատգմ-ների խորհուրդներ և Պետ. դումայի ժամանակավոր կոմիտե, որը մարտի 2(15)-ին ձևավորել է ***Ժամանակավոր կառավարություն***: Նույն օրը Նիկոլայ II կայսրն իր և իր որդու՝ Ալեքսեյի անունից հրաժարվել է գահից՝ հօգուտ եղբոր՝ Միխայիլի: Վերջինս մարտի 3(16)-ին հրաժարվել է իշխանությունից՝ թողնելով հարցի լուծումը Սահմանադիր ժողովին: Մարտին նոր իշխանությունը հաստատվել է ողջ երկրում: Կովկասի փոխարքայությունը փոխարինվել է ***Անդրկովկասյան հատուկ կոմիտեով***, ***Թուրքահայաստանի գլխավոր-նահանգապետությունը***՝ գեներալ-կոմիսարութ-յամբ՝ գեն-կոմիսար Պ. Ի. Ավերյանովի գլխավորությամբ:

ՓԵՐԻ, **դիցանուշ**, **կախարդուհի**, երևակայական կին՝ ըստ կելտ., ռոման. և հայկ. ժող. հավատալիքների, որը սովորաբար բարիք էր գործում:

ՓԵՐԻԱ, գվո Իրանի Սպահանի օստանում, Սպահան ք-ից արմ.: Փ-ում հայերը հաստատվել են XVII դ-ի սկզբին ***Աբբաս I*** շահի կազմակերպած բռնագաղթի հետևանքով: 1938-ին գվո-ում եղել է 24 հայաբնակ գյուղ՝ մոտ 15 հզ. բնակչությամբ: 1946-ին՝ 2400 հայեր, իսկ 1960–70-ական թթ-ին մնացած հայերի մեծ մասը հայրենադարձել է Խորհրդ. Հայաստան: Հետագա տարիներին Փ-ի հայաբնակ գյուղերն աստիճանաբար հայաթափվել են: 24 գյուղից մնացել է միայն Բոլորանը՝ մի քանի հայ ընտանիքներով:

ՓԵՐԻԽԱՆՅԱՆ Անահիտ Գեորգիի (1928–2012), պատմաբան, արևելագետ: Պատմ. գիտ. դ-ր (1974): Աշխ-ները (ռուս.) վերաբերում են Իրանի Պարթև. ու Սասանյանների ժամանակաշրջաններին, միջնադար. Հայաստանի պատմության, գրկ-յան և իրավունքի խնդիրներին, հայ. գրերի ծագման և համեմատ. հնդեվրոպագիտ-յան հարցերին:

Ֆրանսիայի ԳԱ պատվ. անդամ:

ՓԵՓՈՅԱՆ Աստղիկ Ջավենի (ծ. 1965), կենսաբան: Կենսբ. գիտ. դ-ր (2002), պրոֆ. (2002): Աշխ-ները վերաբերում են մոլ. մանրէաբանության, սննդի անվտանգության, կենսատեխնոլոգիաների հարցերին:

ՓԻԹՈՒԵՎ (Փիթոյան), դերասանների, ռեժ-ների, թատեր. գործիչների ընտանիք: **Եսայի** (Իսայի) **Եգորի Փ.** (1844–1904): Թիֆլիսի թատեր. կոմիտեի հիմնադիրներից (1879), Արտիստ. ընկ-յան (1888) հիմնադիրը, կառուցել է ընկ-յան թատրոնի (1901, այժմ՝ Շ. Ռուսթավելու անվ.) շենքը: Եղբայրը՝ **Իվան** (Հովհաննես) **Փ.**, ռեժ.: 1905-ից՝ Փարիզում: Հիմնադրել է Ռուս. արտիստ. ակումբը, կազմակերպել ներկայացումներ: **Ժորժ** (Գեորգի) **Փ.** (1884–1939), Իվան Փ-ի որդին: 1908-ից հանդես է եկել Ս. Պետերբուրգի թատրոններում, հիմնադրել «Մեր թատրոնը»: 1915–22-ին՝ Շվեյցարիայում, ապա Փարիզում ղեկավարել է թատրոն, բեմադրել պիեսներ: Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» շքանշան (1937): **Սաշա** (Ալեքսանդր) **Փ.** (1920–մ. թ. անհտ), Ժորժ Փ-ի որդին: 1922-ից՝ Փարիզում: 1939–49-ին ստեղծագործել է Ժնևի և Լոզանի թատրոններում: Փիթոև ընկ-յան թատրոնի հիմնադիրը, «Մողեռն» թատրոնի տնօրենը: Բեմադրել է Մ. Գորկու «Հատակում», Ա. Պ. Չեխովի «Ճայը» և այլ գործեր: Նկարահանվել է կինոյում («Խաղամոլը», 1938, ևն):

Ֆրանսիայի Սիլիերյան մրց. (1956):

ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆԻ (ծ. թ. անհտ–1086/92), իշխան: Հավանաբար՝ Վասպուրականում հաստատված ***Վարաժնունիների*** նախարար. տոհմից: Բյուզ. բանակում հասել է դոմեստիկոսի տիտղոսի: Մանազկերտի ճակատամարտում (1071) բյուզանդացիների պարտությունից հետո ստեղծել է հայկ. իշխանապետություն (Տավրոսից մինչև Եփրատ)՝ Մարաշ կենտրոնով: Բյուզ. կայսրությունը ճանաչել է Փ. Վ-ու իշխանապետությունը՝ նրան շնորհելով սեբաստրոսի տիտղոս:

Ըստ *Միքայել Ասորու*՝ Փ. Վ–ու ձեռքն են անցել Կիլիկիայի գրեթե բոլոր ամուր բերդերը: Սելջուկ թուրքերի զավթումների հետևանքով 1083–ից Փ. Վ–ու իշխանապետությունն սկսել է թուլանալ:

ՓԻԼԵՏԵՐՈՍ (Philetaerus) Պերգամոնցի (մ. թ. ա. մոտ 343–263), Ատտալյանների հարստության և Պերգամոնի թագավորության հիմնադիրը:

ՓԻԼԻԿՅԱՆ Հովհաննես Իսրայելի (ծ. 1942), ռեժ., թատերագետ, թարգմանիչ: Ճանաչվել է որպես հուն. դաս. ողբերգության ինքնատիպ մեկնաբան (Եվրիպիդեսի «Էլեկտրա», Սոֆոկլեսի «Էդիպ արքա», Շեքսպիրի «Լիր արքա», Ա. Վարդանյանի «Աքիս», ևն): Հեղինակ է թատրոնի պատմությանն ու տեսությանը, կինոյին, հայ մշակույթին վերաբերող աշխ–ների:

ՀՀ ՄՆ Պ. Ադամյանի անվ. մրց. (1985):

ՓԻԼԻՊՊՈՍ II ՄԱԿԵԴՈՆԱՑԻ (մ. թ. ա. մոտ 382–336), Մակեդոնիայի թագավոր՝ 359–ից: *Ալեքսանդր Մակեդոնացու* հայրը: Ավարտել է Մակեդոնիայի միավորումը (359): 359–336–ին գրավել է Թեսալիան, Իլլիրիայի մի մասը, Էպիրոսը, Թրակիան ևն: 338–ին Մակեդոնիայի գերիշխանությունն է հաստատել Հունաստանի վրա:

ՓԻԼԻՊՊՈՍ Ա. ԱԳԼԱԿԵՑԻ (1593–1655), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1632–ից: 1638–ին ուղևորվել է Սպահան և Մայր աթոռ փոխադրել 1612–ից Պարսկաստանում պահվող Հայոց հայրապետ. գլխ. մասունքը՝ Լուսավորչի Աջը: Հակազդել է *Նիկոլ Թորոսովիչի* կաթոլիկամետ քաղ–յանը:

ՓԻԼԻՊՈՍՅԱՆ Հասմիկ Սուրենի (ծ. 1943), արվեստաբան: Պրոֆ. (1996): 1968–82–ին հայկ. հեռուստաստուդիայում վարել է «Նկարիչն ու ժամանակը», «Մի ստեղծագործության պատմություն» և այլ հեղինակ. հաղորդաշարեր: Հեղինակ է «Սասունցի Դավիթը Քոչարի գրաֆիկայում և քանդակագործության մեջ» (ռուս., 1978), «Հայկական քանդակագործություն» (2004), «Հակոբ Գյուրջյան» (2007) և այլ գրքերի:

ՓԻԼԻՊՊՈՍՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ, բարեգործ. կազմ–յուն, հիմնադրվել է 1969–ին Ինդիան Վելսում (Կալիֆոռնիա)՝ մեծահարուստ Ստեփան Փիլիպոսյանի նախաձեռնությամբ: Նպատակը սփյուռքահայ երիտասարդների հայեցի դաստիարակության և կրթության զարգացմանը նպաստելն է: Տրամադրում է կրթաթոշակներ, նյութապես աջակցում է գրահրտչ., հայկ. մշակութ. և սոցիալ. տարբեր կազմ–յունների հայանպաստ ծրագրերին, կրթ. հաստատությունների կառուցման և վերանորոգման աշխ–ներին: Հիմնադրամը տնօրինում է Ամերիկայի Հայ ավետարանչ. ընկերակցության խորհուրդը:

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆ (ծ. թ. անհտ–713), Բյուզանդիայի հայազգի կայսր՝ 711–713–ին: Ծառայել է բյուզ. բանակում, հավակնել գահին, որի համար աքսորվել է Կեֆալոնիա կղզի, ապա՝ Խերսոնես: 711–ին հարել է կայսեր դեմ Խերսոնեսում բռնկած ապստամբությանը, հռչակվել է կայսր և մտել Կ. Պոլիս: Անհաջողություն է կրել արաբների և բուլղարների դեմ պատերազմներում: Զինվորականները գահընկեց են արել և կուրացրել:

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, 1. լայն առումով՝ փիլ. ուսմունք մարդու առաջացման, նրա բնույթի, բնության ու հաս–յան մեջ ունեցած տեղի ու դերի, կյանքի իմաստի մասին: 2. Նեղ առումով՝ XX դ–ի արևմտաեվրոպ. փիլ–յան (գլխավորապես՝ գերմ., 1920–ական թթ.) իդեալիստ. հոսանք: Հիմնադրել են Մ. Շելշրը և Հ. Պլեսները: Փ. մ–յան հիմքում կյանքի փիլ–յան (Վ. Դիլթեյ) և Է. Հուսերլի ֆենոմենոլոգիայի գաղափարներն են, հետագայում ներառվել են նաև պրագմատիզմի (Ա. Գելեն), «մշակութային մարդաբանության» (Է. Ռոթհակեր), էկզիստենցիալիզմի, ստրուկտուրալիզմի և այլ գաղափարներ: Փորձեր են արվել էկլեկտիկորեն համադրել մարդաբան. սկզբունքը մարքսիզմի հետ (Ժ. Սարտր և ուր.):

Հայ փիլ–յան մտքի պատմության մեջ նկատվել են Փ. մ–յան տարբեր ըմբռնումներ: XIX դ–ում որոշակիորեն առանձնացվել է Փ. մ–յան խնդրակարգը, ստեղծվել է յուրօրինակ ուսմունք մարդու մասին, որին բնորոշ են լուսավորականությունը (Խ. Աբովյան, Ա. Փափովիչ, Ն. Զորայան, Ա. Հայկունի, Գ. Չիլինկիրյան, Ս. Նազարյան և ուր.) և հեղ. դեմոկրատիզմը (Մ. Նալբանդյան): Մարդու հիմնախնդրին անդրադարձել են նաև Մ. Մամուրյանը, Գ. Արծրունին, Ղ. Աղայանը և ուր.:

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՔԱՐ, իմաստության քար, երևակայական նյութ, որը փնտրում էին ալքիմիկոսները և փորձում դրա միջոցով իրականացնել հասարակ մետաղների փոխարկումը, բոլոր հիվանդությունների բուժումը ևն: Տես նաև *Ալքիմիա*:

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ, մտածողության և կեցության կամ ոգու և բնության փոխհարաբերության հարցն է: Ըստ դրանց առաջնության մեկնաբանության՝ փիլ–ները բաժանվում են 2 մեծ բանակի. մի մասն առաջնային է համարում կեցությունը, բնությունը, որից ածանցում են մտածողությունը, ոգին (մատերիալիզմ), մյուսները՝ հակառակը, առաջնային են համարում մտածողությունը, ոգին, որոնք նախորդում են կեցությանը, բնությանը (իդեալիզմ): Սակայն հարցն ունի մեկ այլ կողմ ևս՝ «...մեզ շրջապատող աշխարհի մասին մեր մտքերն ինչպե՞ս են վերաբերում այդ իսկ աշխարհին»: Աշխարհի ճանաչելիության հարցը կարելի է անվանել Փ. հ. հ–ի իմացարան. դրվածք:

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ (< հուն. phileo – սիրել և sophia – իմաստնություն), **իմաստասիրություն**, հաս. գիտակցության ձև, աշխարհայացք, գաղափարների համակարգ, աշխարհընկալման և աշխարհում մարդու տեղի մասին հայացքների համակարգ: Փ. ուսումնասիրում է մարդու ճանաչող., սոցիալ–քաղ., արժեք., բարոյական և գեղագիտ. վերաբերմունքն աշխարհի նկատմամբ: Փ–յան պատմականորեն ձևավորված բաժիններն են գոյաբանությունը (օնտոլոգիա՝ ուսմունք կեցության մասին), իմացաբանությունը (գնոսեոլոգիա՝ իմացության տեսություն), տրամաբ–յունը, բարոյագիտ–յունը, գեղագիտ–յունը: Տարբեր փիլ. հարցերի որոնումներում առանձնացվել են միմյանց հակադիր ուղղություններ, ինչպիսիք են, օր.՝ դիալեկտիկան և մետաֆիզիկան, ռացիոնալիզմը և էմպիրիզմը (սենսուալիզմ), մատերիալիզը (ռեալիզմ) և իդեալիզմը, նատուրալիզմը և սպիրիտուալիզմը, դետերմինիզմը և ինդետերմինիզմը ևն: Փիլ–յան պատմ. ձևերն են Հին Հնդկաստանի, Չինաստանի, Եգիպտոսի փիլ. ուսմունքները, հին.հուն., անտիկ Փ.՝ Փ–յան դաս. ձևը (Պարմենիդես, Հերակլիտես, Սոկրատես, Դեմոկրիտես, Էպիկուր, Պլատոն, Արիստոտել), միջնադար. Փ.՝ հայրաբանություն (պատրիստիկա) և նրանից ծագած սխոլաստիկա, Վերածննդի դարաշրջանի Փ. (Գ. Գալիլեյ, Բ. Տելեզիո, Ն. Կուզանացի, Ջ. Բրունո), Նոր շրջանի Փ. (Ֆ. Բեկոն, Ռ. Դեկարտ, Թ. Հոբս, Բ. Սպինոզա, Ջ. Լոն, Ջ. Բերկլի, Դ. Հյում, Գ. Լայբնից), XVIII դ–ի ֆրանս. մատերիալիզմ (Ժ. Լամետրի, Դ. Դիդրո, Կ. Հելվեցիուս, Պ. Հոլբախ), գերմ. դաս. Փ. (Ի. Կանտ, Ի. Ֆիխտե, Ֆ. Շելինգ, Գ. Հեգել), մարքսիզմի Փ. (Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Վ. Ի. Լենին), XIX–XX դդ–ի ռուս. կրոն. Փ. (Վ. Ս. Սոլովյով, Ս. Ն. Բուլգակով, Ս. Լ. Ֆրանկ, Պ. Ա. Ֆլորենսկի, Ն. Ա. Բերդյաև, Լ. Ի. Շեստով, Վ. Վ. Ռոզանով), XX դ–ի Փ–յան հիմն. ուղղությունները՝ նորպոզիտիվիզմ, պրագմատիզմ, էկզիստենցիալիզմ, պերսոնալիզմ, ֆենոմենոլոգիա, նորթոմիզմ, վերլուծ. Փ., փիլ. մարդաբանություն, ստրուկտուրալիզմ, փիլ. հերմենևտիկա: Ժամանակակից Փ–յան հիմն. միտումները կապված են այնպիսի հիմնարար հարցերի հետ, ինչպիսիք են աշխարհը և մարդու տեղը նրանում, ժամանակակից մարդկային քաղաքակրթության ճակատագիրը, մշակույթի բազմազանությունն ու միասնությունը, մարդկային իմացության բնույթը, կեցությունը, լեզուն ևն:

ՓԻԼՈՅԱՆ Ռուբեն Արտավազդի (1937–2012), ըմբիշ, մանկավարժ: Մանկավարժ. գիտ. դ–ր (1985), պրոֆ. (1987): ԽՍՀՄ ս. վ. (1963): 1993–ից՝ Մոսկվայի ֆիզ. կուլտուրայի կենտր. պետ. ակադ–ի պրոռեկտոր: Աշխ–ները վերաբերում են ֆիզ. կուլտուրայի պատմության և տեսության հարցերին:

ՓԻԼՈՅԱՆ Վանիկ Սուրենի (1939–2003), լողորդ, մարզիչ: ՀԽՍՀ վ. մ. (1971), ՀՀ ֆիզ. կուլտուրայի և սպորտի վաստ. աշխատող (2001), ԽՍՀՄ քառակի ռեկորդակիր (1956): 1958–80–ին՝ ՀԽՍՀ լողի հավաքականի մարզիչ, 1990–2003–ին՝ ՀՀ սպորտկոմիտեի պետ:

ՓԻԼՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑԻ, **Փիլոն Երբայեցի** (մ. թ. ա. մոտ 25–մ. թ. մոտ 50), երբայեցի փիլ.: Ալեքսանդրիայում զարգացած հուդայական–հելլեն. փիլ–յան դպրոցի ղեկ.: Հուդայականությունը միավորել է հուն. փիլ–յան, նախ և առաջ՝ ստոիկ. պլատոնականության հետ: Փ. Ա–ու մշակած Աստվածաշնչի այլաբան. մեկնաբանման մեթոդն ազդեցություն է ունեցել *հայրաբանության* (Կլիմենտ Ալեքսանդրացի, *Որոգինես* և ուր.) և միջնադար. մշակույթի վրա:

ՓԻՆԱՋՅԱՆ Արթուր (Աշոտ, 1914–1999), նկարիչ: Աբստրակտ արվ–ի վարպետներից ԱՄՆ–ում: Վաղ շրջանի գործերին բնորոշ է հագեցած գուն. գամման, ուշ շրջանի գործերին՝ ավելի նոսր և թույլ գույները: Հեղինակ է հիմնականում քնար., ռիթմիկ., աբստրակտ. բնապատկերների («Օվեղոլուք» լեռը», 1955, ևն):

ՓԻՆԱՋՅԱՆ Վարոս Վաղարշակի (1909–1994), շին. մեխանիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1956), պրոֆ. (1960): ՀԽՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1959): 1947–74–ին՝ ՀԽՍՀ շին–յան և ճարտարագիտ–յան ԳՀԻ փոխտնօրենն: Աշխ–ները վերաբերում են ձող. համակարգերի տարրերի ամրության և կայունության, կամրջաշինության մեջ միաձույլ երկաթբետոնի կիրառման, մետաղ. կա–

ռուցվածքների սեղմված տարրերի ամրության ու ձևափոխության հարցերին: Փ. Հրազդան գետի Մեծ կամրջի, Բյուրականի աստղադիտարանի պտտվող գմբեթի նախագծերի հեղինակն է:

ՓԻՆԹԵՐ (Pinter) Հարոլդ (1930–2008), անգլիացի դրամատուրգ: Հեղինակ է «Պահակ» (1960), «Վերադարձ տուն» (1965), «Անցած-գնացած ժամանակներ» (1971), «Դավաճանություն» (1978) և այլ պիեսների, «Մյուս ծայրերում» (1982) եռերգության և այլ գործերի: Նոբելյան մրց. (2005):

ՓԻՇՄԻՇ Պարիս (Սուքիասյան Մարի, 1911–1999), աստղագետ: Աստղագիտ. դ-ր (1937): 1946–96-ին՝ Մեխիկոյի ազգ. ինքնավար համալսարանի աստղագիտ-յան ինստ-ի դասախոս: Աշխ-ները վերաբերում են Գալակտիկայի կինեմատիկային, միգամածությունների լուսաչափությանը և տեսագծային արագությունների որոշմանը:

Միջազգ. աստղագիտ. միության անդամ, Մեխիկոյի ազգ. ինքնավար համալսարանի պատվ. դ-ր (1985):

ՓԻՋՅԱՆ Գրիգոր Հովհաննեսի (1919–1998), երկրաբան: Երկրբ-ինքբ. գիտ. դ-ր (1969), պրոֆ. (1971): Աշխ-ները վերաբերում են ՀՀ մետաղ. օգտ. հանածոների հանքավայրերի երկրբ-յան, հանքաբանության և երկրաքիմիայի հարցերին: ՀԽՍՀ Պետ. մրց. (1976):

ՓԻՐԱԴՅԱՆ (Փիրադով) Էլեոնորա Վլադիմիրի (1929–2012), դաշնակահարուհի: Վլադիմիր ***Փիրադյանի*** դուստրը: Ուկրաինայի ժող. արտիստ (1998): Կիևի ֆիլհարմոնիայի մենակատար, ապա՝ կոնցերտմայստեր: ԽՍՀՄ «Պատվո նշան» (1976), Ուկրաինայի «Իշխանուհի Օլգա» (2003) շքանշաններ, Մ. Պ. Մուսորգսկու (1964), Ս. Ա. Գուլակ-Արտեմովսկու (1996) անվ., «Սլավյանե» (1997) փառատոների դափնեկիր:

ՓԻՐԱԴՅԱՆ (Փիրադով) Վլադիմիր Իոսիֆի (Հովսեփի, 1892–1954), դիրիժոր: Պրոֆ. (1950): Ղազախ. (1943), Ուկր. (1947) ԽՍՀ-ների ժող. արտիստ: Էլեոնորա ***Փիրադյանի*** հայրը: 1934-ին՝ ԵՕԲԹ-ի գլխ. դիրիժոր, 1936–41-ին՝ Ուկրաինայի ՕԲԹ-ի դիրիժոր, 1950–54-ին՝ գլխ. դիրիժոր: Ղեկավարել է Ժ. Բիզեի «Կարմեն» (1934), Ջ. Փալիաշվիլու «Դաիսի» (1938), Մ. Ի. Գլինկայի «Իվան Սուսանին» (1939), Կ. Դանկևիչի «Բոգդան Խմելնիցկի» (1953) և այլ օպեր. ներկայացումներ:

ՓԻՐԱԴՈՎ Ալեքսանդր Բոգդանի (ծ. 1933), հավաքորդ: Տեխ. գիտ. դ-ր, պրոֆ.: Հավաքածուն ընդգրկում է Գ. Բաշինջաղյանի, Ե. Թադևոսյանի, Վ. Գայֆեճյանի, Հ. Շամշինյանի, Գ. Շարբաբչյանի, Ա. Բաժբեուկ-Մելիքյանի և ուր. գեղանկարչ., գրաֆիկ. ստեղծագործություններից:

ՓԻՐՂԱԼԵՄՅԱՆ Ղևոնդ (1830–1891), բանասեր, ձեռագրագետ, բանաստեղծ, հրապարակախոս, եկեղեց. գործիչ: 1866-ին՝ Աղթամարի կաթողիկոսի քարտուղար (վրդ-ի աստիճանով), 1867-ին՝ Զեյթունի, 1873–78-ին՝ Մանչեստրի հայ համայնքի հոգևոր առաջնորդ: Հեղինակ է «Նօտարք հայոց» (1823), «Ճանապարհորդութիւն ի Սայր աթոռն Արարատեան եւ անտի ի Կ. Պոլիս» (1871), «Տաղերգութիւն բարոյական եւ ազգային» (1872), «Չորս ընկերք որ է ճանապարհորդութիւն Վանայ մինչեւ Կոստանդնուպոլիս» (1882) աշխ-ների: Փ-ի ձեռագրերի մեծ մասը՝ «Պատմական նշխարքներ» վերտառությամբ, պահպանվում է Մոնղ-ում:

ՓԻՐՈՍՄԱՆԱՇՎԻԼԻ, Փիրոսմանի, Նիկո (Նիկողայոս Ասլանի, մոտ 1862–1918), ինքնուս նկարիչ: Պրիմիտիվիզմի ներկայացուցիչ: Անմիջականությամբ, աշխարհի միամիտ-բանաստեղծ. ընկալմամբ է ստեղծել քաղաք. և գյուղ. տեսարաններ, բնանկարներ, նատյուրմորտներ, հանդիսավոր պատկերներ («Դռնապան», 1904, «Ցախավաճառը», 1906, «Երեք իշխանների խրախճանքը», 1909, «Դերասանուհի Մարգարիտան», 1909, «Կալատեղ», 1915, ևն):

ՓԻՐՍ (Pierce) Ֆրանկլին (1804–1869), ԱՄՆ-ի 14-րդ նախագահը՝ 1853–57-ին՝ Դեմոկրատ. կուս-յունից: Նրա կառ-յունը Մեքսիկայից նվաճել է մոտ 120 $կմ^2$ տարածք:

ՓԻՐՈՒԶ, միներալ՝ $CuAl_6[PO_4]_4(OH)_8 \cdot 4H_2O$: Առաջացնում է հոծ գաղտնաբյուրեղ. զանգվածներ, կեղևիկներ, երակիկներ: Կարծր.՝ 5–6, խտ.՝ 2,6–2,8 $գ/սմ^3$: Աչքի է ընկնում գեղեցիկ երկնագույն կամ կանաչավուն-երկնագույն երանգով: Փ-ի առավել խոշոր հանքավայրեր կան Իրանում, Միջին Ասիայում, ՀՀ-ում: Կիրառվում է գեղ. և ոսկերչ. առարկաների արտադր-յան մեջ:

ՓԻՐՈՒԶՅԱՆ Անաստաս Լևոնի (ծ. 1963), մաշկաբան: Բժշկ. գիտ. դ-ր (2005): Լևոն և Էլեոնորա ***Փիրուզյանների*** որդին: Մաշկաուռուցքաբանության և լազեր. վիրաբուժության մասնագետ: Աշխ-ները վերաբերում են կոսմետոլոգ. միջոցների, դեղանյութերի փորձարար. հետազոտություններին:

ՓԻՐՈՒԶՅԱՆ Արամ Սերգեյի (1907–1996), պետ. աշխատող: Լևոն ***Փիրուզյանի*** հայրը, Անաստաս ***Փիրուզյանի*** պապը: 1938-ին եղել է ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ, 1943-ին՝ ԽՍՀՄ Կառ-յանն առընթեր ՀԽՍՀ ժողկոմխորհի մշտ. ներկայացուցիչը: 1945–48-ին՝ ՀԽՍՀ տեղ. արդ-յան նախարար, 1948-ից՝ ՀԽՍՀ ՆԽ նախագահի 1-ին տեղակալ, 1961–67-ին՝ ԽՍՀՄ Կառ-յան առևտր. ներկայացուցիչը Հունաստանում:

ՓԻՐՈՒԶՅԱՆ Էլեոնորա Սուրենի (ծ. 1940), մոլ. գենետիկ: Կենսբ. գիտ. դ-ր (1977), պրոֆ. (1985): Բույսերի գեն. ճարտարագիտ-յան հիմնադիրներից ՌԴ-ում: Լևոն ***Փիրուզյանի*** կինը, Անաստաս ***Փիրուզյանի*** մայրը: Աշխ-ները վերաբերում են անդրոգենային բույսերի մոդելների վրա գերհոյզային պատասխանների մոլ. մեխանիզմներին:

ՓԻՐՈՒԶՅԱՆ Լևոն Արամի (ծ. 1937), կենսաֆիզիկոս: Բժշկ. գիտ. դ-ր (1968), պրոֆ. (1971): ՌԳԱ ակադ. (2000, թղթ. անդամ՝ 1974), ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (2005): ԽՍՀՄ-ում փորձարար. ֆիզիոլոգիայի և բժշկ. կենսաֆիզիկայի հիմնադիրներից: Արամ ***Փիրուզյանի*** որդին, Էլեոնորա ***Փիրուզյանի*** ամուսինը, Անաստաս ***Փիրուզյանի*** հայրը: Աշխ-ները վերաբերում են կենսահամակարգերի վրա մագնիս. դաշտի լազեր. և այլ ճառագայթների ազդեցության մոլ. և բջջ. մեխանիզմներին: Առաջարկել է էկոֆիզիոլոգիայի, քսենոկենսաքիմիայի տեսություններ, մշակել է հայեցակարգ՝ ախտաբան. անատոմիայում օգտագործվող դեղանյութերը բուժիչ նպատակներով կիրառելու մասին:

ԱՄՆ-ի ավիատիեզ. ընկ-յան (1971), Աստղագնացության միջազգ. ակադ-ի (1980) անդամ: ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (1975), Հոկտ. հեղ-յան (1981) շքանշաններ:

ՓԻՐՈՒՄՅԱՆ Գևորգ Նիկողայոսի (1881–1954), դերասան: ՎԽՍՀ ժող. արտիստ (1947): 1898–1915-ին հանդես է եկել Թիֆլիսի թատերախմբերում, հիմնադրել և ղեկավարել Հայ-վրաց. դրամատիկ. (1904–08), Արևելյան օպերետի (1915–18) թատերախմբերը: 1921–54-ին՝ Թիֆլիսի Հայդրամայի հիմնադիր-դերասաններից (Կակուլի, Ջիմզիմով, Իսայի՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», «Խաթաբալա», Լուկա՝ Մ. Գորկու «Հատակում», ևն):

ՓԻՐՈՒՄՅԱՆ Գևորգ Պետրոսի (ծ. 1951), ֆիզքիմիկոս: Տեխ. գիտ. դ-ր (1997), պրոֆ. (2002): Աշխ-ները վերաբերում են էկոլոգ. քիմիայի, ջրաքիմիայի, գերօքսիդների և ՄԱՆ-երի փոխակերպումների մեխանիզմների ուսումնասիրությանը:

Էկոլոգիայի միջազգ. ակադ-ի (1996), Նյու Յորքի ԳԱ (1996), ՌԲՆԳԱ (2002), ՀԼԿԵՄ մրց. (1980):

ՓԻՐՈՒՄՅԱՆ (Փիրումով, Բեկ-Փիրումյան) Դանիել բեկ Աբիսողոմի (1861–1921), ռազմ. գործիչ, ռուս. բանակի գնդ. (1915): Պողոս բեկ ***Փիրումյանի*** հորեղբորորդին: ԱՀՊ-ի ժամանակ կռվել է Կովկաս. ռազմաճակատում: Սարդարապատի ճակատամարտում (1918) եղել է զորաջոկատի ընդհ. հրամ., ռազմաճակատի կենտր. հատվածում ջախջախել ու հետ է մղել թուրքերին: Հովհաննես ***Բաղրամյանը*** բարձր է գնահատել Փ-ի զորավար. արվ-ը: Գնդակահարել են բոլշևիկները:

Ռուս. կայսրության շքանշաններ և Գեորգիևյան անվան. զենք:

ՓԻՐՈՒՄՅԱՆ (Փիրումով, Բեկ-Փիրումյան) Պողոս (Պավել) բեկ Կարամանի (1862–1921), ռազմ. գործիչ, ռուս. բանակի գնդ. (1914): Դանիել բեկ ***Փիրումյանի*** հորեղբորորդին: 1916-ին Կովկաս. ռազմաճակատում՝ որպես Հայկ. 5-րդ հրաձգ. գնդի հրամ., մասնակցել է Վանի, Մուշի համար մղված մարտերին: 1916–17-ին՝ Դարալագյազ-Նոր Բայազետ զորաջոկատի հրամ.: Սարդարապատի ճակատամարտում (1918) կարևոր դեր է խաղացել թուրք. բանակի ջախջախման գործում: Փ-ի զորավար հմտությունը բարձր է գնահատել Հովհաննես ***Բաղրամյանը***: Չտանելով բոլշևիկ. իշխանությունների բռնությունները՝ ինքնասպան է եղել:

Ռուս. կայսրության պարգևներ:

ՓԻՐՈՒՄՅԱՆ Ռուբինա Բաղդիկի (ծ. 1936), գրականագետ: Հայոց լեզվի և գրկ-յան դ-ր (1989): Հեղինակ է սփյուռքահայ գրկ-յանը, հայ գրկ-յան մեջ հայկ. հարցի ու ցեղասպանության արտացոլմանը վերաբերող, նաև «Հայաստանը ՀՅԴ-բոլշևիկ յարաբերութիւնների ոլորտում, 1917–1921» (1997) աշխ-ների, «Հայկական հարցի պատմություն» (2000) և այլ դասագրքերի: ՄՏԿԿ «Մեսրոպ Մաշտոց» շքանշան (1999):

ՓԻՐՈՒՄՈՎ Ալեքսանդր Իվանի (1930–1995), կոմպոզիտոր: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1983): Հեղինակ է սիմֆոնիաների (1956–80, վերջինը՝ «Երգասացությունների համանվագ Սայաթ-Նովայի թեմաներով»), լար. կվարտետների (2-րդում «Հավիկ» տաղի թեման է), երգեհոն. պրելյուդների (1967), «Հոկտեմբերի օրերը» օրատորիայի (ըստ Ջ. Ռիդի, 1967), դաշնամուրի ու նվագախմբի կոնցերտ-վարիացիաների (1972), դաշնամուր. սոնատի և սոնատինների, «Պոլիֆոնիկ տետր»-ի (12 պրելյուդ և ֆուգա, 1983), խմբերգերի, ռոմանսների, երգաշարերի և այլ գործերի:

ՓԻՐՈՒՄՈՎ Բոգդան Զավադի (1888–1959), շինարար: Մեծ ավանդ ունի

Անդրկովկասում երկթող-ների անցկացման և կամուրջների, թունելների կառուցման բնագավառում: Ղեկավարել է Երևան–Աղստաֆա երկաթգծի շին-յունը:

ՓԻՐՈՒՄՈՎ, Ռեմալ Նիկոլայի (ծ. 1925), խորհրդ. բանակի գեն-մայոր (1976): Տեխ. գիտ. թեկնածու (1968), պրոֆ. (1988): ՌԲՆԳԱ ակադ. (1998): Եղել է Մոսկվայի բարձրագույն տեխ. ուսումնարանի լաբորատորիայի վարիչ, ապա՝ ռազմագիտ. ամբիոնի պետ, 1988–98-ին՝ ինֆորմատիկայի և կառավարման համակարգերի ամբիոնի պրոֆ.: Աշխ-ները վերաբերում են տեղեկատվության անվտանգության, սոցիոլոգիայի և մշակութաբանության հարցերին:

ՓԻՐՈՒՄՈՎ (Փիրումյան) Վլադիմիր Սեմյոնի (1926–2014), ԽՍՀՄ դերձակ (1975): Ռազմ. գիտ. դ-ր (1978), պրոֆ. (1988): ՌԴ գիտ. վաստ. գործիչ (1991): ՀՃԱ ակադ. (1997): Ծառայել է Բալթյան նավատորմում, 1985–90-ին՝ ԽՍՀՄ ՊՆ ԳԾ ակադ-ի ամբիոնի պետ (1990-ից՝ պրոֆ.): Աշխ-ները վերաբերում են կիբեռնետիկայի կիրառ. հարցերին, համակարգ. տեխնիկային, լուծումների և օգտակարության տեսությանը, գործողությունների հետազոտություններին: ՌԲՆԳԱ անդամ և փոխնախագահ (1991), ՌԴ Անվտանգության խորհրդի գիտխորհրդի նախագահ (1993): Պ. Լ. Կապիցայի (1996), Պետրոս I-ի (1996) ոսկե մեդալներ:

ՓԻՐՈՒՄՈՎ, Ուլյան Հայկի (1931–2015), գազադինամիկայի և հրթիռ. տեխնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1969), պրոֆ. (1976, ՄԱԻ), ՌԴԱ թղթ. անդամ (1997): ՌԴ գիտ. վաստ. գործիչ (1989): Աշխ-ները վերաբերում են ֆիզ. գազադինամիկայի, ավիացիոն և հրթիռ. տեխնիկայի խնդիրներում հաշվող. մաթ-ի կիրառմանը, բարդ համակարգերի նմանակային մոդելավորման կիրառ. ծրագրերի փաթեթների ստեղծմանը, հրթիռ. ծայրափողակների տեսության հակադարձ խնդիրների լուծման եղանակների մշակմանը, օդ. ավազանն աղտոտումից պաշտպանելու հարցերին:

ԽՍՀՄ Պետ. (1979, 1987), ԽՍՀՄ ԳԱ Ն. Ե. Ժուկովսկու անվ. (1964) մրց-ներ:

ՓԻՐՈՒՄՈՎ Քրիստափոր Նիկոլայի (1895–1985), մակաբուծաբան-մալարիաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1952), պրոֆ. (1955): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1955): ՀԽՍՀ-ում սանհիգիենև. և հակահամաճարակ. ծառայության հիմնադիր: Աշխ-ները վերաբերում են մակաբուծ. հիվանդությունների (հատկապես՝ մալարիայի) դեմ պայքարի և բուժման, ՀԽՍՀ-ում դրանց վերացման հարցերին: Երևանի պատվ. քաղաքացի (1985):

«ՓԻՒՆԻԿ», գր-գեղ., տեղեկատու տարեգիրք (1858–62, Ադիս-Աբեբա): Ազգ. Գևորգյան վարժարանի հրտ-յուն:

«ՓԻՒՆԻԿ», ազգ., գր., քաղ. պարբերաթերթ (1899–1900, Կահիրե, 1901–03, Ալեքսանդրիա, 1909, Կ. Պոլիս): Խմբ.՝ Սմբատ Բյուրատ:

«ՓԻՒՆԻԿ», գր-գեղ. ամսաթերթ (1918–20, Բոստոն): Ամերիկահայ հրտչ. ընկ-յան հրտ-յուն: Խմբ-ներ՝ Շահան Նաթալի, Նշան Տեստեկյուլ, Երվանդ Մելեքյան, Սահակ Չթճյան, Փիլիպոս Մինասյան:

«ՓԻՒՆԻԿ», հաս-քաղ., գր. շաբաթաթերթ (1979–83, Թեհրան): Խմբ.՝ Ժորժ Համբարչյան:

ՓԻՓԵՐԹ (Malva), **մոլոշ, բալբա**, փիփերթազգիների (տուտտազգիներ) ընտանիքի միամյա, երկամյա կամ բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 40 տեսակ՝ Հս. կիսագնդի բարեխառն, մասամբ՝ մերձարևադարձ. շրջաններում, ՀՀ-ում՝ 4 (5)՝ բոլոր մարզերում: Աճում է այգիներում, բանջարանոցներում, բնակավայրերի և ճանապարհների մերձակայքում, ցանքերում (մոլախոտ է): Մի քանի տեսակ օգտագործում են սննդի մեջ (տերևները և մատղաշ ընձյուղները): Դեղազարդիչ է, մեղրատու:

ՓԼԱԹ (Plath) Սիլվիա (1932–1963), ամերիկացի բանաստեղծուհի: Հեղինակ է «Կոթող» (1960), «Արիել» (1965) և այլ ժող-ների, «Ապակե կափարիչի տակ» (1963) կիսակենսագր. վեպի: Պուլիցերյան մրց. (1982, հետմահու):

ՓԼԱՎԻՈՍՆԵՐ (Flavii), Հռոմի կայսրերի հարստություն՝ 69–96-ին: Ներկայացուցիչները՝ ***Տիտոս Վեսպասիանոս*** և ***Դոմետիանոս***: Պրովինցիաների բնակչության վրա տարածել են հռոմ. և լատ. քաղաքացիության իրավունքները, նրանց ավագանու մի շարք ներկայացուցիչներ ընդգրկվել են ծերակույտի մեջ: Արևելքում վարել են համեմատաբար խաղաղ քաղ-յուն:

ՓՀԵՆՅԱՆ, Կորեայի ԺԴՀ մայրաքաղաքը Տեդոնգսն գետի ափին: Բն.՝ 3,3 մլն (2010): Արվարձանների հետ առանձին վոմ է: Տրանսպորտ. հանգույց է, խոշոր արդ. կենտրոն. կան մեքենաշին., քիմ., դեղագործ., փայտամշակման, սննդի արդ-յան և այլ ձեռն-ներ: Փ-ի մոտակայքում է երկրի գլխ. ածխավազանը: Գործում են բազմաթիվ բուհեր, թատրոններ և թանգարաններ (Հեղ-յան թանգարանը, Պետ. գեղ. պատկերասրահը ևն): Փ. Կորեայի հնագույն քաղաքներից է: 427–668-ին եղել է Կոգուրյո պետության մայրաքաղաքը, Կորյո պետության շրջանում (918–1392)՝ երկրի արմ. մայրաքաղաքը՝ Սոգյոն անունով: Շարտ. հուշարձաններից են Իլմիլդե պարեկաշտարակը (III դ., վերակառուցվել է XIV դ-ում), Տեդոնմուն (III դ., վերակառուցվել է), Պոտհոնմուն (X դ., վերակառուցվել է XV դ-ում) դարպասները ևն:

ՓՂԱԽՏ, **էլեֆանտիազ** (հուն.՝ elephas – փիղ), մարդու և կենդանիների հիվանդություն, ուղեկցվում է մարմնի առանձին մասերի (հաճախ՝ ոտքերի) չափերի կայուն մեծացմամբ՝ մաշկի և ենթամաշկի խիստ հաստացման հետևանքով: Պայմանավորված է ավշային ուղիների քրոնիկ. բորբոքումներով և ավշի կանգով:

ՓՂԱԿՐԻԱՆԵՐ, հսկա կրիաներ, ցամաք. կրիաների ընտանիքի ամենամեծ սողունը: Հայտնի է 2 տեսակ՝ իսկական Փ. (Գալապագոս. կղզիներում, գրահի երկ.՝ մինչև 1,5 *մ*) և հսկա կամ իսպոլինյան կրիա (Հնդ. օվկ-ի Ալդաբրա կղզիներում, գրահի երկ.՝ մինչև 1,2 *մ*): Մինչև XVIII դ. Փ. բազմաքանակ էին Խաղաղ և Հնդ. օվկ-ների կղզիներում (ոչնչացվել են մսի, ճարպի, ձվերի համար): Ապրում են 100–150 տարի:

ՓՂԵՐ (Elephantidae), կնճիթավորների կարգի կաթնասունների ընտանիք: Ցամաք. ամենախոշոր կենդանիներն են (բարձր.՝ 4–4,5 *մ*, կ. զ.՝ մինչև 5, երբեմն՝ մինչև 7,5 *տ*): Մաշկը գրեթե մերկ է, միայն անհետացած մամոնտն է ունեցել խիտ մազածածկույթ: 1 տեսակ (2 ենթատեսակով) ապրում է Աֆրիկայի անտառներում և 1 տեսակ՝ Հվ-արլ. Ասիայում: Մնվում են բուս. կերով: Աֆրիկ. Փ-ի թվաքանակը կրճատվում է՝ ապրելավայրերի նվազման և ժանիքների (փղոսկր) համար որսագողության պատճառով: Հնդ. Փ. հեշտությամբ ընտելանում են, և նրանց օգտագործում են տարբեր աշխ-ների համար: 2 տեսակներն էլ գրանցված են ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՓՂՇՏԱՅԻՆԵՐ (երբ.՝ պելիշտիմ), հնագույն ժողդ (մ. թ. ա. XIII դ.–մ. թ. I դ.) Միջերկրականի արլ. ծովեզերքում՝ Քանան երկրամասի հվ-արմ-ում: Ըստ Ասվածաշնչի՝ գաղթել են Կափթորից (Կրետե կղզուց), ըստ այլ տեղեկությունների՝ Կապադովկիայից: Մ. թ. ա. XII դ-ում գրավելով Քանանի մի շարք քաղաքներ՝ ստեղծել են 5 ք–իշխանությունների միություն, մինչև X դ. իրենց գերիշխանությունն են հաստատել գրեթե ողջ Քանանում, որն այնուհետև՝ նրանց անունով կոչվել է ***Պաղեստին*** (երբ.՝ Պելեշետ): Փ-ի հետագա առաջխաղացումը X դ-ի սկզբին կանխել է ***Դավիթ*** թագավորը: Մ. թ. ա. VIII դ-ի 2-րդ կեսից Փ. հնազանդվել են Ասորեստանին, Նոր Բաբելոնիային, Աքեմենյան Իրանին: Հունա-մակեդն. տիրակալության պայմաններում Փ. հելլենացվել են (մ. թ. I դ–ից չեն հիշատակվում որպես ինքնուրույն ժողդ):

ՓՅԱՆՋ, գետ Տաջիկստանում և Աֆղանստանում, Ամուդարյայի ձախ վտակը: Երկ.՝ 921 *կմ*, ավազանը՝ 114 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 1032 *մ³/վ*: Կազմավորվում է Պամիր և Վախանդարյա գետերի միախառնումից: Փ-ի հովտով է անցնում Դուշանբե–Խորոգ ավտոմայրուղին:

ՓՅՈՒՆԻԿ, **ֆենիքս**, հեքիաթ. թռչուն՝ ըստ հնագույն պատկերացումների, որը կանխազգալով իր վախճանը՝ ինքնակիզվել է և իր մոխրից իսկույն վերածնվել նոր ու երիտասարդ: Փ. հավերժ. վերածնության խորհրդանիշ է:

«ՓՅՈՒՆԻԿ», մարդկային ռեսուրսների զարգացման համահայկ. հիմնադրամ: Հիմնադրվել է 1994-ին (Երևանում գրանցվել է 2008-ին): Հիմնադիր և հոգաբարձուների խորհրդի պատվո նախագահ՝ Գաբրիել ***Չևրեջոյան***, հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Լևոն ***Մարգսյան***: Բարեգործ. ծրագրեր է իրականացնում ՀՀ-ում, Արցախում և Սփյուռքում: Մտնդ-ին է նվիրել շուրջ 1100 ձեռագիր, հովանավորել նոր մասնաշենքի կահավորումը, Արցախի մասնաճյուղի («Գանձասար» գիտամշակութ. կենտրոն) հիմնադրումը, Կոմիտասի տուն-թանգարանի, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստ-ի նոր մասնաշենքի կառուցումը: «Վերածնունդ» (Գյումրի, 2009–ից) երաժշտ. փառատոնի, «Ոսկե ծիրան» կփ գլխ. հովանավորը: Աջակցում է Մայր աթոռում իրականացող բազմաթիվ ծրագրերի, ՀՀ դպրոցներին, մանկապարտեզներին:

ՓՅՈՒՆԻԿԵՐԵՆ, ***փյունիկկացիների*** լեզուն: Պատկանում է սեմ. լեզվաընտանիքի քանան. ենթախմբին: Խոսվել է մ. թ. ա. II–I հզ-ամյակներում և մ. թ. I հզ-ամյակի սկզբին Փյունիկիայում և Միջերկրածովայքի փյունիկաբնակ վայրերում (Կիպրոս, Սիցիլիա, Սարդինիա, Մասսալիա, Իսպանիա, Հս. Աֆրիկա): Հս. Աֆրիկայում ուշ Փ. (պուներենը) պահպանվել է մինչև արաբ. նվաճումների դարաշրջանը (VIII դ.), բուն Փյունիկիայում՝ մինչև II դ.: Փ. օգտագործել է Աստվածաշնչի կեղծ հիերոգլիֆային գիրը, ավելի ուշ՝ ***փյունիկյան գիրը***:

ՓՅՈՒՆԻԿԵՑԻՆԵՐ, հնագույն սեմ. ցեղեր, պատկանել են արևմտասեմ. ցեղերի քանան. ճյուղին:

ՓՅՈՒՆԻԿԻԱ, **Փյունիկե**, հնագույն պետություն Միջերկր. ծովի արլ. ափին: Փյունիկյան ք–պետությունները (Բիբլոս, Տյուրոս, Սիդոն ևն) վարել են ծով. և ցամաք. ակտիվ առևտուր, Միջերկրականի ափերին հիմնադրել են մի շարք գաղութներ, այդ թվում՝ ***Կարթագենը***: Մ. թ. ա. VI դ–ում Փ. նվաճել են պարսիկները, մ. թ. ա. 332–ին՝ Ալեքսանդր Մակեդոնացին: Մ. թ. ա. I դ–ի 1–ին կեսին Փ. ընդգրկվել է ***Տիգրան Բ***–ի հայկ. տերության, այնուհետև՝ հռոմ. Ասորիք պրովինցիայի կազմի մեջ:

ՓՅՈՒՆԻԿՅԱՆ ԱՐՄԱՎԵՆԻ (Phoenix), արմավենիների ընտանիքի երկտուն ծառանման բույս: Պտուղը պինդ սերմով հատապտուղ է. որոշ տեսակներինն օգտագործվում է սննդում: Հայտնի է Փ. ա–ու 15 տեսակ՝ Ասիայի և Աֆրիկայի արևադարձ. շրջաններում: Բուն Փ. ա. Հս. Աֆրիկայից մինչև Ինդոս գետը տարածված չոր մերձարևադարձ. շրջանների ինդոյան բույս է, որը մշակվել է Եգիպտոսում և Միջագետքում դեռևս մ. թ. ա. VII հզ–ամյակից:

ՓՅՈՒՆԻԿՅԱՆ ԳԻՐ, գրային բաղաձայն. համակարգ. օգտագործվել է Փյունիկիայում, Պաղեստինում և Կարթագենում: Հուշարձաններն ավանդվել են մ. թ. ա. II հզ–ամյակի 2–րդ կեսից մինչև մ. թ. IV դ.: Վաղ շրջանի Փ. գ–ի՝ հուշարձաններով չվկայված տարբերակներից են սերում փռյուգիական և հուն. այբուբենները (վերջինից՝ լատ–ը, կիրիլիցան ևն), ինչպես նաև բրահմին և սրանից ծագած Հնդկաստանի, Հվ–արլ. Ասիայի, Տիբեթի գրային համակարգերը:

ՓՅՈՒՆԻԿՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, փյունիկեցիների գրկ–ը. ազգակից է ուգարիտ. գրկ–յանը, և միասին կազմում են քանան. գրկ–ը: Փյունիկիայի և նրա գաղութների տարածքներում պահպանվել են մ. թ. ա. II–I հզ–ամյակների տապանագրեր ու ընծայագրեր: Փ. գ–յան դից. սյուժեները (սիրո և պտղաբերության աստվածուհի Աստարտայի, «տիրակալ» Վաալի մասին ևն) հայտնի են հելլեն գիտնականների վերապատումների շնորհիվ. Ադոնիսի տառապանքների և հարության առասպելն օգտագործել է Օվիդիուսը «Կերպարանափոխություններ» պոեմում:

ՓՇԱԳԼՈՒԽՆԵՐ (Acanthocephala), **ականտոցեֆալներ**, առաջնախոռոչավորների տիպի որդերի դաս: Երկ.՝ 1–65 *սմ*: Հայտնի է ավելի քան 500 տեսակ. մակաբուծում են ողնաշարավորների աղիներում: Կարող են ոչնչացնել ձկների, թռչունների և կաթնասունների:

ՓՇԱԿԻՐ (Echinophora), **փշահովանցուկ**, նեխուրազգիների (հովանոցավորներ) ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 10 տեսակ, ՀՀ–ում՝ 2՝ Կոտայքի, Արմավիրի, Արարատի, Սյունիքի, Վայոց ձորի և այլ մարզերում, Երևանի շրջակայքում: Դեղաբույս է:: Պարունակում է եթերայուղեր:

ՓՇԱՁՆԵՐ (Gasterosteidae), փշաձկնակերպների կարգի ձկների ընտանիք: Երկ.՝ 3–8 (հազվադեպ՝ մինչև 20) *սմ*, կ. զ.՝ մինչև 5 *գ*: Հայտնի է 17 տեսակ՝ Եվրասիայի, Հս. Ամերիկայի և Հս. Աֆրիկայի ծովերում: Փ–ին հատուկ է սերունդների հանդեպ խնամքը: Արուն բույն է կառուցում, պահպանում մատղաշին: Արդյունագործ. նշանակություն չունի:

ՓՇԱՄԱՆԴԻԿ (Atraphaxis), մատիտեղազգիների ընտանիքի ծայրահեղ չորասեր թփերի ցեղ: Հայտնի է 20 տեսակ, ՀՀ–ում՝ 4՝ Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի, Գեղարքունիքի մարզերի և ԼՂՀ լեռն. շրջանների չոր լանջերին: Կարելի է օգտագործել պարտեզների ցանկապատեր պատրաստելու համար:

ՓՇԱՄՈՐԹՆԵՐ (Echinodermata), ծով. անողնաշար կենդանիների տիպ: Ծագել են մինչքեմբրիում: Երկ.՝ մի քանի *մմ*–ից մինչև 1 *մ*, հազվադեպ՝ ավելի (որոշ բրածոներ՝ մինչև 20 *մ*): Փ–ի մարմինը ճառագայթաձև–համաչափ է, կմախքը՝ կրային: Ի տարբերություն բոլոր այլ կենդանիների՝ ունեն ջրանոթ. (ամբուլակրալ) համակարգ, որը ծառայում է շարժվելուն, արտաթորությանը և շոշափմանը: Մարմինը սովորաբար բաժանված է մի քանի (հաճախ՝ 5) միանման մասերի: Հայտնի է ժամանակակից 5 դաս՝ ծովաշուշաններ, ծովաստղեր, օձապոչեր, ծովոզնիներ և ծովագլաններ կամ հոլոթուրիաներ: Հայտնի են մոտ 6,3 հզ. ժամանակակից (մոտ 10 հզ–ը՝ անհետացած) տեսակներ: Որոշ տեսակներ (ծովոզնիներ, ծովագլաններ) արդյունագործ. կենդանիներ են:

ՓՇԱՏԵՆԻ (Elaeagnus), փշատազգիների ընտանիքի մշտադալար կամ տերևաթափ ծառերի կամ թփերի ցեղ: Հայտնի է 80 տեսակ՝ Արլ. և Հվ. Ասիայում (հիմնականում՝ Հապոնիայում, Չինաստանում) և Հվ. Եվրոպայում, մեկական՝ Հս. Ամերիկայում և Ավստրալիայում, ՀՀ–ում՝ 2՝ Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի և այլ մարզերում: Նեղատերև և արծաթագույն Փ. մշակում են որպես գեղազարդիչ և եթերայուղատու բույս: Մեղրատու է: Պտուղը պարունակում է շաքարներ, սպիտակուցներ, վիտամիններ, օրգ. թթուներ: Ունեն բուժիչ և սննդատար հատկություններ: Փ–ու 2 տեսակն էլ գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

ՓՇԱՏԵՐԵՎԱԶԳԻՆԵՐ (Coniferae կամ Pinidae), մերկասերմ բույսերի ենթադաս: Հիմնականում մշտադալար ծառեր են, հազվադեպ՝ թփեր: Կան տերևաթափ տեսակներ: Նրանց բնափայտը բաղկացած է գերազանցապես երիզավոր ծակոտիներով տրախեիդներից: Հայտնի է ավելի քան 600 տեսակ, որոնց մեջ կան շատ խոշոր ծառեր՝ մինչև 100 *մ* բարձր–յան և 6–9 *մ* տրամագծով (սեքվոյա, սեքվոյադենդրոն): ՀՀ–ում (Դիլիջան, Մտեփանավան, Զանգեզուր և Նոյեմբերյան) պահպանվել են կենու (կարմրածառ) և սոճու բնական ոչ խոշոր անտառակներ:

ՓՇԱՔԵՂ (Limonium), արճճախոտազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի կամ փայտացող տերևաածածկ ճյուղերով կիսաթփերի ցեղ: Հայտնի է մոտ 300 տեսակ (բոլոր մայրցամաքներում, հատկապես՝ Միջերկրածովյան կենտր. Ասիա, հաճախ աճում է աղակալած հողերում, մի քանի տեսակ առաջացնում են դաշտագլոր), ՀՀ–ում՝ 2 (3)՝ Արարատի մարզի աղուտ և գիպս. հողերում: Դեղազարդիչ է: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՓՈԹԻ, ք–նվինգստո Վրաստանում՝ Ռիոն գետի գետաբերանում: Բն.՝ 47,9 հզ. (2012): Երկթող. կայարան է:: ՀՀ արտաքին բեռնաշրջանառության զգալի մասն իրականացվում է Փ–ի նվինգստ–ից: Հիմնադրվել է 1578–ին:

ՓՈԹՈՐԻԿ, հանկարծակի, ուժգին, ուղղությունը հաճախ փոխող կարճատև քամի: Սովորաբար ընդգրկում է մի քանի *կմ* լայն–յան տարածք: Ուղեկցվում է տեղատարափ անձրևներով, ամպրոպներով, կարկուտով կամ նախորդում է դրանց: ՀՀ–ում Փ–ներ առաջանում են տարվա տաք ամիսներին (80 %)՝ հս., լ–հովտային քամիների ժամանակ: Առավել ուժգին (30–32 *մ/վ*) Փ–ներ դիտվում են Երևանում, Սիսիանի լ–անցքում՝ հիմնականում օրվա 2–րդ կեսին (95 %), և տևում են 6 *ր*–ից ավելի: Սովորաբար քամու արագությունը Փ–ների ժամանակ 15–20 *մ/վ* է, երբեմն՝ ավելի քան 40 *մ/վ*: Փ. առաջացնում է ավերածություններ:

ՓՈԼԱԴՅԱՆ Արշակ Պողոսի (ծ. 1948), արևելագետ, պատմաբան, դիվանագետ: Պատմ. գիտ. դ–ր (1996), պրոֆ. (2010): ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան ԱՄՆ–ում (2000–02), համատեղության կարգով՝ նաև Քուվեյթում և Բահրեյնում (2003–07), Սիրիայում (2007–ից) և Հորդանանում (2011–ից): Աշխ–ները վերաբերում են քրդերի միջնադար. պատմությանը, հայ–արաբ. հարաբերություններին, Արևելքի և իսլամի պատմությանը:

ԱՄՆ բարձրագույն՝ «Անկախության» 1–ին աստիճանի շքանշան (2006), ՀՀ «Մխիթար Գոշ» մեդալ (2010):

ՓՈԼԱԴՅԱՆ Սիրվարդ (1908–1970), երաժշտագետ: Ուսումնասիրել է Բրազիլիայի, Պերուի, Չիլիի, Բոլիվիայի, Էկվադորի ժող. երաժշտությունը, հեղինակ է «Հայկական ժողովրդական երգեր» (անգլ., 1942), «Կոմիտաս վարդապետը և նրա ներդրումը երաժշտական ազգագրության մեջ» (անգլ., 1972) և այլ աշխ–ների:

ՓՈԼԱՏՅԱՆ Անդրանիկ Լևոնի (1929–2005), խմբ., գրող, հաս. գործիչ: ԹՄՄ հիմնադիրներից: 1954–ից՝ ԱՄՆ–ում: ***«Պայքար»***, ***«Նոր օր»***, ***«Գևրմանիկ»***, ***«Յուշարար»***, ***«Յուշարար–Միութիւն»*** պարբ–ների խմբ.: Եղել է ՀԲԸՄ կրթ. հանձնաժողովի ատենապետը: Հեղինակ է «Խրիմեան Հայրիկ» (հայ. և անգլ., 1957), «Պատմութիւն հայոց Արաբկիրի» (1969), «Մարաշ» (1988), «Շահան Շահնուր» (2003) աշխ–ների, «Հերկ եւ բերք» (2002) հոդվածների ժող–ի:

ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՐԶ ԹՎԵՐ, բնական թվեր, որոնք չունեն ընդհ. բաժանարար՝ բացի 1–ից, օր.՝ 15 և 16:

ՓՈԽԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԿՋԲՈՒՆՔ ֆիզիկայում, **փոխադարձության թեորեմ**, սահմանում է 2 աղբյուրների և նրանց ստեղծած դաշտերի միջև եղած խաչաձև կապն այդ աղբյուրների տեղակայման տեղերում՝ նույն գծային համակարգի կամ միջավայրի համար: Փ. ս. գործում է մեխ., ձայն., էլ., մագնիս. և այլ համակարգերի համար, որոնք նկարագրվում են Լապլասի, Հելմհոլցի, ալիք. դիֆուզիայի և այլ հավասարումներով: Առաջինը ձևակերպել է Հ. ***Հելմհոլցը*** (1860), ընդհանրացրել են Ջ. Ռեյեյը (1873) և Հ. Լորենցը (1869):

ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԻՄՆԱՐԱՐ ֆիզիկայում, տարր. մասնիկների և նրանցից կազմված մարմինների փոխազդեցություններ. հայտնի են դրանց ուժեղ, էլեկտրամագնիս., թույլ և գրավիտացիոն տեսակները: 1Ջ.Վ էներգիայով պրոտոնների համար այդ փոխազդեցություններով պայմանավորված շարժընթացների ինտենսիվությունները միմյանց հարաբերում են, համապատասխանաբար, ինչպես $1 : 10^{-2} : 10^{-10} : 10^{-38}$: Մշակված է էլեկտրամագնիս. և թույլ փոխազդեցությունների միացյալ տեսություն (էլեկտրաթույլ փոխազդեցություն): Գոյություն ունեն մո-

դելներ, որոնք ներառում են նաև ուժեղ փոխազդեցությունը (մեծ միասնացում): Փորձեր են կատարվում բոլոր փոխազդեցությունները նկարագրել միասնական հիմքի վրա:

ՓՈԽԱԿԵՐՊԻՉ, 1. հաստատուն էլ. հոսանքը փոփոխականի վերածող սարք: 2. Էլեկտրոն. սարք, որի ելք. մեծությունը (ազդանշան) կրկնում է (ուժեղացումով կամ առանց դրա) մուտք. մեծությունը (ազդանշան), բայց հակառակ նշանով (փուլ, բևեռայնություն, մակարդակ): 3. Մի տեսակի ազդանշանը մեկ այլ տեսակի ազդանշանի փոխարկող (օր.՝ անալոգայինը՝ թվայինի, օդաճնշականը՝ էլեկտրականի) սարք:

ՓՈԽԱԿԵՐՊԻՉ ՏԵԽՆԻԿԱ, 1. Էլեկտրատեխնիկայի բաժին. ընդգրկում է էլ. հոսանքի փոխակերպման (ըստ լարման, հաճախության, փուլի ևն) եղանակների և միջոցների մշակման հարցերը: 2. Էլեկտրատեխ. փոխակերպման սարքերի՝ տրանսֆորմատորների, ուղղիչների, հաճախությունների փոխակերպիչների, ֆազատրոհիչների և այլ սարքերի ամբողջությունը:

ՓՈԽԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, ուժեղացման գործակից, էլ. ազդանշանների փոխանցման համակարգի ելքի և մուտքի ազդանշանների հզորությունների (կամ լարվածությունների, հոսանքների) արժեքների հարաբերությունը: Եթե համակարգը թուլացնում է հաղորդվող ազդանշանը, ապա օգտագործում են «մարման գործակից» եզրույթը, որը Փ. գ-ի հակադարձ մեծությունն է: Ընդհ. դեպքում Փ. գ. փոփոխ. մեծություն է, կոչվում է **փոխանցման ֆունկցիա**:

ՓՈԽԱՆՑՄԱՆ ԹԻՎ, անվի և ժանանվի ատամների թվերի հարաբերությունն ատամնավոր փոխանցման մեջ, անվի ատամների և որդնակի առմուտների թվերի հարաբերությունը՝ որդնակային փոխանցման, մեծ ու փոքր աստղանիվների ատամների հարաբերությունը շղթ. փոխանցման մեջ ևն: Փ. թ. միշտ մեծ կամ հավասար է 1-ի:

ՓՈԽԱՆՑՈՒՄ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ձևայնացված (օր.՝ նշաններով) ներկայացված ընդհատ (դիսկրետ) տեղեկույթի (տվյալների) փոխանցումն աղբյուրից սպառողին՝ 2 (և ավելի) համակարգիչների, համակարգիչների և կառավարման ավտոմատ ու ավտոմատացված, տեղեկութ., հաշվող., հեռուստամեխ. և այլ համակարգերի օգտատերերի միջև: Փ. տ., որպես կանոն, կատարում են լար. և ռադիոկապի բազմակապուղի գծերով, ռադիոռելեային և օպտիկ. (այդ թվում՝ թելքաօպտիկ.) կապի գծերով: Համակարգերի մեծ մասն ապահովում է Փ. տ-ի մի քանի տասնյակից մինչև մի քանի հզ. *բիթ/վ* արագություն:


ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ, 1. մի լեզվի հնչյուն. ու ձևաբան. միջոցներով մեկ այլ լեզվի ձևույթների, բառերի կամ բառակապակցությունների վերարտադրումը: 2. Ձևույթներ, բառեր, բառակապակցություններ, որոնք մի լեզվից թափանցել են մեկ այլ լեզվի մեջ: Տարբերում են անմիջական և միջնորդ. (միջնորդ լեզվի միջոցով), ներքին և արտաքին Փ-ներ: Հայ-ի պատմության տարբեր շրջաններում Փ-ներ են կատարվել տարբեր լեզուներից, ավելի հին են պարսկ., ասոր., հուն., արաբ., նոր՝ թուրք., ֆրանս. իտալ., նորագույն՝ ռուս. և այլ Փ-ներ:

ՓՈԽԱՏՎԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱ, փոփատվ. կապիտալի նկատմամբ պահանջարկի ու առաջարկի ձևավորման, ինչպես նաև վարկ. գործառնությունների իրականացման ոլորտ: Որպես վաճառող՝ հանդես են գալիս առևտր. ու ներդրում. բանկերը, ապահովագր. ընկ-ները ևն, գնորդ՝ պետությունը, արդ. ու առևտր. ֆիրմաները, առանձին անձինք:

ՓՈԽԱՐԺԵՔ ԱՐԺՈՒՅԹԻ, մի երկրի դրամ. միավորի գինը՝ արտահայտված այլ երկրի դրամ. միավորով: Տարբերում են բորսայական (տատանվող, ճկուն. սահմանվում է բորսայական աճուրդի շնորհիվ) և ամրագրված (սահմանում է պետությունը) Փ. ա-ներ:

ՓՈԽԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆ Կովկասի, Ռուս. կայսրության վտմ Կովկասում: Սահմանել է *Եկատերինա II*-ը XVIII դ-ի 2-րդ կեսին՝ Պարսկաստանում և Այսրկովկասում Ռուսաստանի քաղ-յունն ակտիվացնելու նպատակով: Ստեղծվել է 1844-ին՝ Վրաստանի, Արլ. Հայաստանի և այժմյան Ադրբեջանի տարածքները Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո: Գործել է մինչև 1916-ը: Առաջին փոխարքան եղել է Մ. Ս. *Վորոնցովը*, վերջինը՝ Ի. Ի. *Վորոնցով-Դաշկովը*:

ՓՈԽԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ աստղագիտության մեջ, մոլորակների, Լուսնի և *Արեգակնային համակարգի* այլ մարմինների ընորոշ դիրքերը Երկրի և Արեգակի նկատմամբ: Այսպես կոչված ներքին մոլորակների (Մերկուրի, Վեներա) համար տարբերում են մոլորակների վերին և ներքին միացումներ, արլ. և արմ. էլոնգացիաներ, վերին մոլորակների (Մարս, Յուպիտեր ևն) համար՝ մոլորակների միացումներ, մոլորակների դիմակայություններ, արլ. և արմ. քառակուսացումներ (նկ.): Լուս. Փ. բնութագրվում է *Լուսնի փուլերով*:



Մոլորակների փոխդասավորությունը

ՓՈԽՀԱՂՈՐԴԱԿ, շարժիչից պտույտը աշխ. մեքենաներին (հաստոցներ, աղացներ, ջարդիչներ ևն) հաղորդող սարք կամ համակարգ: Փ. են անվանում նաև տրակտորներում, ավտո- և այլ ինքնագնաց մեքենաներում շարժումը շարժիչից շարժասարքին հաղորդող փոխանցիչների համախումբը:

ՓՈԽՀԱՏՎՈՂ ԿԱՄԱՐՆԵՐ, խաչվող կամարներ, հայկ. ճարտ-յանը բնորոշ կառուցվածքի ձև՝ 2 կամ ավելի հատվող կամարներ, որոնք շենքի ծածկը պահող կայուն համակարգ են: Առաջին հիշատակությունը՝ X դ-ում (Անանուն Արծրունի): Հայաստանում կատարելության է հասել XIII դ-ում: Դասակարգվում է ըստ հատվող կամարների քանակի՝ երկկամարանոց (Հոռոմայրի գավիթ, Անիի Առաքելոց եկեղեցի ևն), քառակամար (Հաղպատ, Գանձասար, Խորանակերտ ևն) ևն:

ՓՈԽՊԱՏՎԱՍՏՈՒՄ, տրանսպլանտացիա (միջնադար. լատ.՝ transplantatio – տեղափոխ անել), 1. մարդու և կենդանիների օրգանների ու հյուսվածքների Փ. հիվանդներին: Որպես վիրաբուժ. մեթոդ՝ հայտնի է խոր անցյալից: Օգտագործվում են մաշկի, մկանների, նյարդերի, աչքի եղջերաթաղանթի, ճարպ. և ոսկր. հյուսվածքների, ոսկրածուծի, սրտի, երիկամների և այլ Փ-ներ: Փ-ման հատուկ ձև է արյան փոխներարկումը: Կենսբ-յան, փորձարար. (կենդանիների վրա) և կլինիկ. բժշկագիտ-յան մեջ կիրառում են ինքնա-Փ. (սեփ. հյուսվածքների), նույնա- (հոմո-, նույն տեսակի) և այլա- (հետերո-, այլ տեսակի դոնորից, օր.՝ ճագարից՝ շանը) Փ-ներ: 2. **Բույսերի Փ.**, բույսի մասի Փ. մայր բույսի այլ հատվածի կամ այլ բույսի վրա: Կիրառում են այգեգործության մեջ (պատվաստումներ) և փորձարար. հետազոտություններում:

ՓՈԿԱՍ (լատ.՝ Flavius Phocas Augustas), Բյուզանդիայի կայսր՝ 602–610-ին: Իշխանության է եկել *Մավրիկիոս* կայսրին գահընկեց անելուց հետո, իսկ Փ-ին գահընկեց է արել զորավար Հերակլը:

ՓՈԿՎՈՂ ՓՈԽԱՆՑՈՒՄ, պտտ. շարժման մեխ. փոխանցումը ձգված փոկով, որը գցված է լիսեռներին ամրացված *փոկանիվների* վրայով: Տարբերում են հարթ-փոկավոր, սեպափոկավոր և կլորափոկավոր, նաև ատամնափոկավոր փոխանցումներ:

ՓՈԿԵՐ (Phocidae), մաշկոտանիների կարգի ջր. կաթնասուն կենդանիներ: Հայտնի է 2 ընտանիք՝ իսկական Փ.՝ 19 տեսակ (գրենլանդ., կասպիական, բծավոր կամ սովոր., օղակավոր, երկարադունչ, շերտավոր Փ., ծով. նապաստակ ևն) և ականջավոր Փ.: Ապրում են առավելապես մերձբևեռ. լայն-յուններում: Արդյունագործ. կենդանիներ են (միսը, կաշին, ճարպը): Մի շարք տեսակների թվաքանակը կրճատվում է: Իսկական Փ-ի մի քանի տեսակներ և ենթատեսակներ պահպանվում են:

ՓՈԿԻՈՆ (մ. թ. ա. 397–317), աթենացի զորավար, ստրատեգոս (ընտրվել է 45 անգամ): Աջակցել է մակեդոնացի արքաներ Փիլիպոս II-ին և Ալեքսանդր Մակեդոնացուն: Մ. թ. ա. 323-ից հետո Աթենքում պաշտպանել է օլիգարխ. կարգն ու հավատարմությունը Մակեդոնիային: Մեղադրվել է դավաճանության մեջ և մահապատժի ենթարկվել:

ՓՈՂ, 1. պղնձե փող. մունդշտուկավոր երաժշտ. գործիք: Կազմված է կրկնակի կորացված գլանակոնաձև Փ-ից, որն ավարտվում է փողալայնուկով: Նվագախմբային և մենակատար գործիք է: Տարբերում են փոքր, ալտային, բասային տեսակները: Փ-ի համար գործեր են գրել Յ. Հայդնը, Ա. Ժոլիվեն, Ալեքսանդր Հարությունյանը և ուր.:

2. **Դրամ**, փոխանակ. հարաբերությունների իրականացման միջոց, համընդհ. համարժեք: Առաջացել է որոշակի պատմ. փուլում: Մինչկապիտալիստ. հասարակարգերում Փ-ի դեր են կատարել տարբեր ապրանքներ (գազանների մորթիներ, հացահատիկ, անասուններ), աստիճանաբար այն փոխանցվել է ազնիվ մետաղներին (ոսկի, արծաթ), որոնք առավելապես համապատասխանել են դրամ. ապրանքի

պահանջներին: Ժամանակակից վճարահաշվային հարաբերությունների բարդացումը պայմանավորել է մետաղե Փ–ի փոխարինումը վարկայինով, որոնք ունեն թղթադրամի տեսք: Փ–ի հիմն. գործառույթներն են արժեքի չափ, շրջանառության և խնայողության միջոց լինելը:

«ՓՈՂ ԱՐԵՒԵԼԵԱՆ», քաղ., ազգ., բանասիր., առևտրային օրաթերթ (1870–73, Կ. Պոլիս, 1870–71–ին՝ «Փող առաւօտեան»): Խմբ–ներ՝ Հակոբ Պարոնյան, Կարապետ Երզինկանյան, Բարթող Սուր:

ՓՈՂԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, երաժշտ. գործիքներ, որտեղ ձայնարտաբերողը որևէ փողի (խողովակի) այուննե է: Տարբերում են սուլող (ֆլեյտաներ, սրինգ, բլուլ ևն), լեզվակավոր (միալեզվակավոր՝ հոբոյ, ֆագոտ, դուդուկ, զուռնա ևն, երկլեզվակավոր՝ կլառնետ, սաքսոֆոն) և շրթնային (կոռնետ, փող, ալտ, բարիտոն, տրոմբոն ևն) տեսակներ: Սուլող և լեզվակավոր տեսակներն անվանվում են նաև փայտե Փ. ե. գ., իսկ շրթնայինները՝ պղնձե Փ. ե. գ.: Գործածվում են որպես մենակատար և նվագախմբային գործիքներ:

ՓՈՂԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, փող. երաժշտ. գործիքների համար գրված երաժշտություն: Փ. ե–յանն են վերաբերում նաև կամեր. փող. անսամբլների և առանձին փող. գործիքների համար երկերը:

ՓՈՂԱՇՈՒՇԱՆ (Calla), նվիկազգիների ընտանիքի բազմամյա պալարավոր խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 1 տեսակ (Եվրասիայի, Հս. Ամերիկայի բարեխառն և մերձարևադարձ. գոտիներում): Աճում է գրեթե ամենուր, ջրամբարների, ճահիճների ափերին: Թունավոր է: ՀՀ–ում ջերմատնային պայմաններում մշակվում է ճահճային Փ.: Գեղազարդիչ է:

ՓՈՂԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, տեսություն, համաձայն որի՝ փող են միայն որպես վճարամիջոց օգտագործվող պայման. դրոշմանշանները: Առաջացել է հնում, զարգացել XVIII դ–ում՝ Ջ. Բելերսիո, Ն. Բարբոնի, Ջ. Բերկլիի (բոլորը՝ Մեծ Բրիտանիա) աշխ–ներում: Միջին դարերում օգտագործվել է մետաղադրամների փչացումը (վնասումը) արդարացնելու, նոր ժամանակներում՝ դրանք վարկ. փողերով փոխարինելը հիմնավորելու համար (Գ. Կնապ՝ Գերմանիա, Ֆ. Բենդիկսեն՝ Ավստրիա): Ժամանակակից Փ. ա. տ. թղթադրամների թողարկումը համարում է տնտ–յան պետ. կարգավորման կարևոր միջոց, մերժում է ոսկու՝ որպես դրամ. ապրանքի դերը:

ՓՈՂԻ ԳՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ապրանքների ծավալ, որոնք կարելի է ձեռք բերել դրամ. միավորի հաշվին («փողի ապրանքային գին»): Ներքին Փ. գ. կապված է գների մակարդակի հետ: Արտաքին Փ. գ.՝ ազգ. դրամ. փոխարժեքով վերահաշվարկված գնողունակությունն է արտերկրում:

ՓՈՂԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, տեսություն, համաձայն որի՝ գոյություն ունի ուղղակի կախվածություն շրջանառության մեջ առկա դրամ. զանգվածի աճի և ապրանքների գների ածի միջև. դրամ. գործոնները որոշիչ ազդեցություն են թողնում տնտ. ակտիվության մակարդակի վրա: Առաջին ներկայացուցիչներն են Շ. Մոնտեսքյոն, Դ. Յումը: XX դ–ում այն զարգացրել են Ջ. Մ. Քեյնսը, Ի. Ֆիշերը, Մ. Ֆրիդմենը և ուր.:

ՓՈՂՀԱՐՆԵՐ, 1. **ագամներ**: կոունկանմանների կարգի թռչունների ընտանիք: Մարմնի երկ.՝ 43–53 *սմ*: Հայտնի է 3 տեսակ՝ Հվ. Ամերիկայի արևադարձ. անտառներում: Արձակում են կրծք. և մեղեդ. փող. ձայներ (այստեղից՝ անվանումը): Զուգավորման շրջանում խմբերով պարում են: 2. Առաջնախոհակավորների ենթադասի ծով. փափկամարմինների ընտանիք: Խեցու բարձր.՝ մի քանի *մմ*–ից–50 *սմ*: Հայտնի է 30 սեռ, հիմնականում՝ Հս. կիսագնդի բարեխառն և սառնօվկիանոս. ջրերում: Օգտագործում են սննդի մեջ, խեցիները՝ որպես զարդ, խոշոր խեցիները հնում կիրառվել են որպես ազդանշանման փող:

ՓՈՇԱՆՈՒԹ, առէջքի հիմն. մաս, որտեղ առաջանում է փոշեհատիկը: Կազմված է առէջքաթելի շարունակությամբ՝ կապիչով, միմյանց միացած 2 համաչափ կեսերից, որոնցից յուրաքանչյուրում կան 1–2 փոշեբներ: Լինում են կլոր, սրտաձև, նստած, շարժուն, ճեղքերով, անցքերով ևն:

ՓՈՇԵՄԵՏԱՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, մետաղների փոշիների, դրանցից պատրաստված շինվածքների, այդ փոշիների խառնուրդների և ոչ մետաղների հետ դրանց կազմած բաղադրանյութերի արտադր–յուն: Փոշիները մշակվում են մեխ. մանրացմամբ, հեղուկ մետաղների փոշիացմամբ, բարձրջերմաստիճան. վերականգմամբ և ցնդող միացությունների ջերմ. դիսոցմամբ, էլեկտրոլիզով և այլ մեթոդներով: Շինվածքները ստանում են սովորաբար մամլմամբ՝ դրան հաջորդող կամ միաժամանակյա ջերմ., ջերմամեխ. մշակմամբ՝ առանց հիմն. բաղադրիչը հալելու: Փ–ի մեթոդներով հնարավոր է պատրաստել շինվածքներ, որոնց ստացումն այլ եղանակներով անհնար է կամ տնտեսապես ոչ շահավետ:

ՓՈՇԵՊԼԱԶՄԱ, իոնացված գազ, որը պարունակում է փոշեհատիկներ (մի քանի տասնյակ *նմ*–ից մինչև մի քանի հարյուր *մկմ* չափերի): Փ–ի մասնիկները կարող են տարածության մեջ դասավորվել որոշակի ձևով և առաջացնել փոշու բյուրեղ: Վերջինս կարող է հալվել կամ գոլորշիանալ: Եթե Փ–ի մասնիկներն ունեն բավականաչափ մեծ չափեր (մինչև մի քանի *մկմ*), ապա տեսանելի են անզեն աչքով:

ՓՈՇԻՆԵՐ, օդում կամ այլ գազ. միջավայրում բաշխված պինդ մասնիկներ: Առավել տարածված են 1–100 *մկմ* չափերով Փ. (օր.՝ մուրը, մանր ավազը), իսկ 1 *մկմ*–ից փոքր մասնիկներով բարձրադիսպերս Փ. առաջացնում են ***աերոզոլներ***:

ՓՈՇՈՏՈՒՄ, ծաղկավոր բույսերի փոշանոթից ծաղկափոշու փոխանցումը վարսանդի սպիի կամ մերկասերմերի սերմնաբողբոջի վրա: Նախորդում է բեղմնավորմանը: 1 ծաղկի կամ 1 բույսի սահմաններում Փ. կոչվում է ինքնափոշոտում, իսկ այլ բույսի ծաղկի վրա ծաղկափոշու փոխադրումը՝ խաչաձև Փ.:

ՓՈՍԱԳԼՈՒԽՆԵՐ, թունավոր օձերի ընտանիք: Երկ.՝ մինչև 3,7 *մ*: Գլխի կողքերին կան ջերմազգայուն 2 փոսեր (այստեղից՝ անվանումը): Հայտնի է 6 սեռ, այդ թվում՝ բուշմայստերները (սուրուկուկուներ), վահանադունչները, բոժոժավոր օձերը (2 սեռ): Հայտնի է 140 տեսակ: Ապրում են ցամաքում, ջրամերձ տարածքում և ծառերի վրա: Ձվակենդանածին են: Վտանգավոր են մարդու համար: 2 տեսակ գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՓՈՍՏԱՃՅԱՆ Թորգոմ (Արամ) Արմենակի (ծ. 1926), գր., հաս., եկեղեց. գործիչ: 1994–2000–ին՝ Լոս Անջելեսի հայ ԳՄ ատենապետ: Լոս Անջելեսի հայկ. ամենօրյա Մեսրոպյան ազգ. վարժարանի հիմնադիր–տնօրեն (1965): Հեղինակ է «Անհանգրուան տարեգիրներ» (1982), «Սէրը եւ իր այլակերպութիւնները» (1988) պատմվածքների ժող–ների, «Հայաստանեայց եկեղեցին եւ միւսները» (2002, անգլ.՝ 2005), «Ականաւոր հայ գրական դէմքեր» (2006) և այլ աշխ–ների:

ՓՈՍ (մոտ 810 կամ մոտ 827–890–ական թթ.), բյուզ. եկեղեց. գործիչ, աստվածաբան, գիտնական: Կ. Պոլսի հույն պատրիարք՝ 858–867 և 877–886–ին: Մայրը հայուհի էր: Նպաստել է քրիստոնեության տարածմանը բուլղարների և ռուսների մեջ, պայքարել պատկերամարտների, աղանդավորների, հատկապես՝ պավլիկյանների դեմ: Հեղինակ է «Բյուրամատյան» աշխ–յան, որտեղ քննադատ. դիտողություններով հոդվածներ է զետեղել տարբեր ժամանակների հեղինակների 280 գրքից: Պահպանվել են Փ–ի նամակները կաթողիկոս ***Զաքարիա Ա. Զագեցուն***:

ՓՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, 1. պինդ նյութերի՝ քարի, փայտի, լինոլեումի, մետաղի, ապակու (վերջին երկուսի վրա՝ նաև թթուներով խածատելու միջոցով) և այլ մակերեսների վրա հատիչներով և այլ գործիքներով պատկերի, զարդապատկերի, մակագրության ևն փորագրումը: 2. Փայտից, մետաղից, լինոլեումից և այլ պինդ նյութերից տպաճնի («տախտակի») վրա փորագրված գծանկարի տպածոն թղթի (կամ նման նյութի) վրա՝ **փորագրանկարը** (գրավյուր): Հայկ. Փ. սկզբնավորվել է XVI դ–ում:

ՓՈՐԱԿԱՎՈՂ ՄԻԱՑՈՒՄ, մեքենամասերի միացում, երբ դրանցից մեկի վրայի ատամները մտնում են մյուսի փորակի մեջ: Փ. մ–ման մեքենամասերը կարող են մեկը մյուսի նկատմամբ լինել շարժ. կամ անշարժ:

ՓՈՐԱՓՔԱՆՔ, **մետեորիզմ** (հուն.՝ meteorismos – վեր բարձրանալ), գազերի կուտակումը ստամոքսաղիք. համակարգում: Ուղեկցվում է որովայնի փքվածությամբ, գխտոցներով, կծկանք. ցավերով: Մի շարք հիվանդությունների (այսպես կոչված՝ աննդ.) ժամանակ մարսողության խանգարումների ախտանշան է: Մննդում բջջանքով հարուստ մթերքի օգտագործման հետևանք է:

ՓՈՐԹՈՒԿԳԱԼՅԱՆ Մկրտիչ Ռափայելի (1848–1921), հաս–քաղ. գործիչ, հրապարակախոս: Արմենական կուս–յան հիմնադիրներից: Գործել է Վանում: Մարսելում հրատարակել է ***«Արմենիա»*** պարբ–ը: Փ–ի կարծիքով՝ հարկավոր էր համազգ. հեղ–յամբ թոթափել օսմ. լուծը և հռչակել Հայաստանի անկախությունը:

«ՓՈՐՁ», ազգ., հաս–քաղ., գր., կրթ. հանդես (1876–81, Թիֆլիս): Խմբ.՝ Աբգար Հովհաննիսյան:

ՓՈՐՁԱՒՈՒԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գիտափորձի վրա հիմնված հոգեբ–յան ընագավառ կամ բաժին: Նպաստել է XIX դ–ի 2–րդ կեսին փիլ–յան հոգեբ–յան՝ որպես ինքնուրույն գիտ–յան, առանձնանալուն: Հիմնադիրն է Վ. ***Վունդտը*** (1879–ին Լայպցիգում ստեղծել է 1–ին հոգեբ. լաբորատորիան, կատարել փորձարար. հետազոտություններ): Փ. ի–յան ընագավառում կարևոր ներդրում են ունեցել Ն. Լանգեն,

Ա. Ֆ. Լազուրսկին և ուր.: 1880-ական թթ-ից սկսած՝ հոգեբ. լաբորատորիաներ են ստեղծվել մի շարք երկրներում:

Հայաստանում առաջին հոգեբ. լաբորատորիան ստեղծվել է 1958-ին: Ներկայում փորձառ. մեթոդը լայնորեն կիրառվում է հոգեբ-յան զանազան հարցեր լուծելու նպատակով:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ (իրավ.), 1. **դատաբժշկական**, նշանակվում է դատաքննչ. պրակտիկայում առաջացած բժշկ. և կենսբ. հատուկ հարցերի (մահվան պատճառ, մարմնական վնասվածքների բնույթ, առողջության վիճակ, տարիք, խմածության աստիճան, անձի նույնություն ևն) պատասխանն ստանալու համար: 2. **Դատահոգեբուժական**, հոգեկան կասկածելի լիարժեքություն ունեցող անձանց հոգեբուժ. քննությունը, նշանակում են դատարանն ու քննչ. մարմինները: 3. **Քրեագիտական,** նշանակվում է քր. գործի քննության ընթացքում քրեագիտ. գիտելիքներ պահանջող հարցերի (մարդու ձեռքերի ու ոտքերի, ջարդող գործիքների, տրանսպորտ. միջոցների, կենդանիների հետքեր, ձեռագրեր) պատասխանն ստանալու համար:

ՓՈՐՈՏԱՆԻՆԵՐ, **խխունջներ**, խեցիավոր փափկամարմինների ամենաբազմաքանակ և տարածված դասը: Գլուխը սովորաբար շոշափուկներով է և զույգ աչքերով: Խեցին (բարձր.՝ 0,5 *մմ*–70 *սմ*) պարուրաձև ոլորված է, որոշ տեսակներինը բացակայում է: Հայտնի է 3 ենթադաս՝ առաջնախոիկավորներ, թոքավորներ, հետնախոիկավորներ՝ մոտ 90 հզ. տեսակով: Մի շարք Փ. մակաբույծ որդերի միջանկյալ տերեր են, ցամաք. ձևերը վնասում են այգու և բանջարանոց. մշակաբույսերը, որոշ ձևեր արդյունագործ. կենդանիներ են:

ՓՈՐՈՔՆԵՐ, 1. խոռոչներ մարդու և ողնաշարավոր կենդանիների նյարդ. համակարգում. 4-ը՝ գլխուղեղում, 1-ը՝ ողնուղեղում: 2. Մարդու, ողնաշարավոր կենդանիների և որոշ անողնաշարների (փափկամարմինների մեծ մասի) սրտի բաժիններ են (կամ բաժին):

ՓՈՐՔՇԵՅԱՆ Հովակիմ Քրիստափորի (1911–1995), դատաբժիշկ: Բժշկ. գիտ. դ-ր (1950), պրոֆ. (1956): ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1974): Աշխ-ները վերաբերում են դատաբժշկ. վնասվածքաբանության հարցերին. գործն. դատաբժշկության մեջ առաջինն է ուսումնասիրել լազեր. վնասվածքները: Չելյաբինսկի դատաբժիշկների ընկ-յան հիմնադիր-նախագահ (1950–59), Լենինգրադի դատաբժիշկների բաժանմունքի վարչության նախագահ (1968–81):

ՓՈՅԽԻՇՎԻԼԻ Մորիս Թովմայի (1930–1993), վրացի բանաստեղծ: Հեղինակ է «Բալենիները անձրևի տակ» (1957), «Սիրտը փնտրում է սիրտ» (1960, հայ.՝ 1968), «Երջանկության ծիածանը» (1976), «Բացվիր երկինք» (1976, հայ.՝ 1980) և այլ բանաստեղծությունների ու պոեմների ժողովների: Թարգմանել է Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի, Հ. Շիրազի, Հ. Սահյանի և ուր. գործերից: Հայ. հրատարակվել է նաև «Հոգին հոգու հետ (Ծիածանվող հոգիներ)» (2013) էսսեների և զրույցների ժող-ը: ՀԳՄ Հ. Թումանյանի անվ. մրց. (1982):

ՓՈՈՒԳ (Pogue) Ռիդ Ուիլյամ (1930–2014), ամերիկացի աստղագնաց: Թռել է «Ապոլոն» տիեզերանավով և «Սքայլաբ» ուղեծրակայանով (1973-ի նոյեմբեր–1974-ի փետր.): Թռիչքի տևողությունը՝ 84 օր (2 անգամ ելքով՝ բաց տիեզերք):

ՓՈՓ ԱՐՏ (անգլ.՝ pop art, < popular art – հանրամատչելի արվ.), գեղ. հոսանք 1950-ական թթ-ի 2-րդ կեսից ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում: Փ. ա-ի ներկայացուցիչները, հրաժարվելով գեղանկարչության և քանդ-յան սովոր. եղանակներից, մշակել են պատրաստի կենցաղ. առարկաների, մեխ. ընդօրինակությունների (լուսանկար, մուլյաժ, վերատպություն), զանգված. տպագրության հրտ-յունների հատվածների (գովազդ., արդ. գրաֆիկա, կոմիքսներ ևն) արտասովոր համադրություններ:

ՓՈՓՈԽԱԿԱՆ ԱՍՏՂԵՐ, բնութագրվում են փոփոխ. պայծառությամբ: Տարբերում են խավարուն և ֆիզ. Փ. ա.: Ֆիզ. Փ. ա-ի մեջ առանձնացնում են բարախող (*գլֆլիխդներ*, RR Քնարի տիպի աստղեր ևն), պայթյունային և նորանման, ժայթքումային, պտտվող, նաև տիեզ. ռեզոր ռենտգեն. աղբյուրների հետ կապված Փ. ա.:

ՓՈՓՈԽԱԿԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (մաթ.), մեծություններ, որոնք դիտարկվող դեպքում ընդունում են զանազան արժեքներ կամ պահպանում են նույն արժեքը: Փոփոխ. և հաստատուն մեծությունների միջև տարբերությունը հարաբերական է. որոշակի խնդրում հաստատուն մեծությունը կարող է լինել փոփոխական՝ մեկ այլ խնդրում:

ՓՈՓՈԽԱԿԱՆ ՋԱՆԳՎԱԾՈՎ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԵԽԱՆԻԿԱ, տես. մեխանիկայի բաժին, որն ուսումնասիրում է այն մարմինների մեխ. շարժումները, որոնց զանգվածները շարժման ընթացքում փոփոխվում են՝ դրանցից նյութ. մասնիկների անջատման (կամ միացման) հետևանքով: Այսպիսի խնդիրներ առաջանում են հրթիռների, ռեակտիվ ինքնաթիռների, երկն. մարմինների ևնի շարժման դեպքում:

ՓՈՓՈԽԱԿԱՆ ՀՈՍԱՆՔ, լայն իմաստով՝ ժամանակի ընթացքում փոփոխվող էլ. հոսանք: Նեղ իմաստով՝ պարբեր. հոսանք, որի դեպքում պարբերության միջին արժեքը հավասար է 0-ի: Առավել հաճախ կիրառում են սինուսոիդային Փ. հ.:

ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (կենսբ.), առանձնյակների և նրանց խմբերի հատկանիշների ու հատկությունների բազմազանությունը՝ ազգակցության ցանկացած աստիճանում: Ներհատուկ է բոլոր կենդանի օրգանիզմներին: Տարբերում են ժառանգ. և ոչ ժառանգ., անհատ. և խմբային, որակ. և քանակ., ուղղորդված և չուղղորդված Փ.: Ժառանգ. Փ. պայմանավորված է մուտացիաների առաջացմամբ, ոչ ժառանգականը՝ արտաքին գործոնների ազդեցությամբ: Ժառանգականության և փոփոխականության երևույթներն էվոլյուցիայի հիմքն են:

ՓՈՔՐ ԱՆՏԻԼՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ, Վեստ Ինդիայում՝ *Անտիլյան կղզեխմբի* հվում և արլ-ում: Ներառում է Վիրգինյան, Հողմակողմ, Հողմատակ կղզեխմբերը, Բարբադոսը ևն: Ընդհ. տարածքը՝ 14 հզ. *կմ*², բն.՝ 3,7 մլն (2009):

ՓՈՔՐ ԱՌՅՈՒԾ (լատ.՝ Leo Minor), երկնքի հս. կիսագնդի համաստեղություն՝ Մեծ Արջ, Լուսան և Առյուծ համաստեղությունների միջև: Պարունակում է 4 *ա. մ.* ընդամենը 3 աստղ, որոնք երևում են անզեն աչքով:

ՓՈՔՐ ԱՍԻԱ, թ-կղզի Ասիայի արմ-ում, ժամանակակից Թուրքիայի տարածքը: Ափերը ողողում են Սև, Մարմարա, Էգեյան և Միջերկր. ծովի ջրերը: Մեծ մասն զբաղեցնում է կիսաանապատ. Փոքրասիական բարձրավանդակը, առափնյա մասերում կան նեղ ցածրավայրեր՝ միջերկրածով. բուսականությամբ:

ՓՈՔՐ ԱՐՋ (լատ.՝ Ursa Minor), հս. բևեռամերձ համաստեղություն՝ Ցեֆեուս, Ընձուղտ և Վիշապ համաստեղությունների միջև: 7 ամենապայծառ աստղերից կազմված պատկերը հիշեցնում է շերեփ: Ամենապայծառը *Բևեռային աստղն* է: Փ. Ա-ում է աշխարհի Հս. բևեռը (անկյուն. հեռ-յունը Բևեռ. աստղից՝ մոտ 1º): ՀՀ տարածքից երևում է ամբողջ տարին:

ՓՈՔՐ ԶԱԲ, գետ Իրանում և Իրաքում, Տիգրիսի ձախ վտակը: Երկ.՝ 456 *կմ*, ավազանը՝ 19,4 հզ. *կմ*², ջրի միջին ծախսը ստորին հոսանքում՝ 219 *մ*³/*վ*, հորդացումների ժամանակ՝ մինչև 3–3,5 հզ. *մ*³/*վ*: Սկիզբ է առնում Քրդստանի լ-շղթայից:

ՓՈՔՐ ՋՈՆԴԱՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ, Մալայան կղզեխմբի հվ. մասը, հիմնականում՝ Ինդոնեզիայում: Ներառում է Բալի, Սումբա, Ֆլորես, Թիմոր և այլ կղզիներ: Տարածքը՝ շուրջ 128 հզ. *կմ*², բն.՝ 14 մլն (2014):

ՓՈՔՐ ԹԱՏՐՈՆ Ռուսաստանի, ինագույն դրամատիկ. թատրոն Մոսկվայում: Կազմավորվել է 1750-ական թթ-ից, 1824-ից՝ Փ. թ., 1919-ից՝ ակադեմ.: Փ. թ-ում ձևավորված ռեալիստ. դերասան. արվ-ի դպրոցը պայմանավորված է Ա. Ս. Գրիբոյեդովի, Ն. Վ. Գոգոլի, Ա. Ն. Օստրովսկու, Վ. Շեքսպիրի և ուր. պիեսների բեմադրություններով: Թատրոնում աշխատել են դերասաններ և ռեժ-ներ Մ. Ս. Շչեպկինը, Պ. Ս. Սոչալովը, Ս. Վ. Շումսկին, Ա. Ի. Յուժինը, Մ. Ն. Երմոլովան, Ն. Ա. Նիկուլինը, Մ. Մ. Կլիմովը, Վ. Ն. Ռիժովան, Մ. Ի. Ժարովը, Մ. Ի. Յարյովը, Ի. Վ. Իլինսկին, Ե. Ն. Գոգոլևան, Ե. Վ. Սամոյլովը, Է. Ա. Բիստրիցկայան, Վ. Ի. Կորշունովը (1985-ից՝ տնօրեն), Ի. Վ. Մուրավյովան, Վ. Պ. Պավլովը և ուր.: Գեղ. ղեկ.՝ Յ. Մ. Սոլոմին (1988-ից):

ՓՈՔՐ ԿՈՎԿԱՍ, ծալքաբեկորավոր լ-շղթաների համակարգ Հայկ. լ-աշխարհի հս-արլ-ում: Ձգվում է հս-արմ-ից հվ-արլ. մոտ 600 *կմ*՝ Սև ծովի հվ-արլ. ափից մինչև Արաքսի հովիտը: Լայն.՝ մինչև 90 *կմ*: Մեծ Կովկասից բաժանվում է Հվ. Կովկասի միջլեռն. իջվածքով: Դեպի հվ-արլ. աստիճանաբար բարձրանալով՝ Մեսովի լ-շղթայում հասնում է 3724 *մ*-ի (Արիության լ.): Խրամի հովտով բաժանվում է Աջարա–Իմերեթյան (Վրաստանի արմ. սահմաններում) և Վիրահայոց–Արցախյան մասերի: Վերջինս կազմված է Կուրի և Արաքսի ջրբաժան լ-շղթաներից ու դրանց լ-բազուկներից:

ՓՈՔՐ ՀԱՅՔ (լատ.՝ Armenia Minor), Հայաստանի արմ. (անդրեփրատյան) տարածքի և այնտեղ ձևավորված պետության անվանումը: Ընդգրկել է Եփրատի վերին, Ճորոխ գետի վերին ու միջին, Գայլ և Հալիս գետերի վերին հոսանքների շրջանը: Հայ ժողդ-ի ծագման և ձևավորման տարածքներից է: Հնագույն ժամանակներից Փ. Հ-ի տարածքը եղել է հայկ. պետությունների (*Հայասա*, *Երվանդունիների* թագավորություն) կազմի մեջ:

Մ. թ. ա. VI դ-ի վերջին ընկել է Աքեմենյան Պարսկաստանի գերիշխանության տակ: *Գավգամելայի ճակատամարտից* (մ. թ. ա. 331) հետո հռչակվել է Փ. Հ-ի անկախությունը: XI դ-ում Փ. Հ-ում ստեղծվել

են Արծրունիների նոր, նաև *Գագիկ Բ*-ի, *Գագիկ Արապյանի* իշխանությունները: XI դ–ի 2–րդ կեսին Փ. Հ. զավթել են սելջուկյան, XV դ–ի 1–ին կեսից՝ օսմ. թուրքերը: XIX դ–ի վերջ–XX դ–ի սկզբին Փ. Հ–ի տարածքը մտել է Սեբաստիայի, մասամբ՝ Էրզրումի, Տրապիզոնի, Խարբերդի, Ադանայի նահանգ–ների կազմի մեջ: Մեծ եղեռնի ժամանակ Փ. Հ–ի հայերը բռնագաղթել են Միջագետքի անապատներ և ընաջնջվել: Սակավաթիվ փրկվածների մի մասը բռնի մահմեդականացվել է, մյուս–ները՝ տարագրվել:

ՓՈՔՐ ՁԻ (լատ.՝ Equuleus), հասարակած. համաստեղություն՝ Դելֆինի, Ջրհոս և Պեգաս համաստեղությունների միջև: Երկնոլորտի ամենափոքր համաստեղություններից է: Պայծառ աստղեր չունի:

«ՓՈՔՐ ՄՀԵՐ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ, ռազմ. գիշերօթիկ հանրակրթ. ուս. հաստատություն: Հիմնադրվել է 2005–ին Երևանում: Նպատակը հանրակրթ. և հայկազունա–կադետ–սեպուհական լրացուցիչ կրթ. ծրագրերի հիման վրա սաների ռազմահայրենասիր. և նախազորակոչային պատրաստությունն ապահովելն է, նրանց ռազմ. կամ այլ ուս. հաստատություններ ընդունվելուն նպաստելը: Կրթությունը՝ 6–12–րդ դասարաններ: 2005–16–ին կրթահամալիրն ավարտել են շուրջ 200 հայկազուններ: 2017–ից՝ *Ռազմամարզական վարժարանի* կազմում:

ՓՈՔՐ ՄՈԼՈՐԱԿՆԵՐ, աստղակերպներ, էլիպսաձև ուղեծրերով *Արեգակի* շուրջը պտտվող երկնմ. մարմիններ, որոնք մոլորակներից տարբերվում են փոքր չափերով: *Արեգակնային համակարգում* կա Փ. մ–ի մի քանի ընտանիք: Փ. մ–ի գլխ. գոտին գտնվում է *Մարսի* և *Յուպիտերի* ուղեծրերի միջև, և նրա բոլոր Փ. մ–ի ընդհ. զանգվածը փոքր է Երկրի զանգվածի հզ–րդ մասից: Այդ գոտու ամենախոշոր Փ. մ. են Ցերերան, Պալլասը, Վեստան և Յունոնան:

ՓՈՔՐ ՇԱՀՆԱՐԾԻՎ, **փոքր ենթաարծիվ** (Aguila pomarina), բազեանմանների կարգի ճուռակների ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 60–65, թևերի բացվածքը՝ 134–159 *սմ*: Խոշոր, գիշատիչ թռչուն է՝ լայն թևերով: Բնադրումն առավելապես հաստատված է «Խոսրովի անտառ» արգելոցի բարձրարուն անտառներում: Մնվում է մանր ողնաշարավորներով, միջատներով:

ՓՈՔՐ ՇՈՒՆ (լատ.՝ Canis Minor), հասարակած. համաստեղություն՝ Երկվորյակներ, Միաեղջյուր, Հիդրա և Խեցգետին համաստեղությունների միջև: Այստեղ է երկնքի ամենապայծառ աստղերից մեկը՝ Պրոցիոնը:

ՓՈՔՐԱԳԼԽՈՒԹՅՈՒՆ, **միկրոցեֆալիա** (< *միկրո*… և հուն.՝ kephale – գլուխ), գանգի և գլխուղեղի փոքր չափերը՝ մարմնի մյուս մասերի համեմատաբար բնականոն չափերի դեպքում: Սովորաբար զուգակցվում է սակավամտության (օլիգոֆրենիա) հետ:

ՓՈՔՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ, մեխանիկայի վարիացիոն սկզբունքներից, որի համաձայն՝ մեխ. համակարգի որոշակի դասի՝ միմյանց հետ համեմատվող հնարավոր շարժումներից իրականացվում է այն, որի դեպքում գործողությունը փոքրագույնն է:

ՓՈՔՐԱԳՈՒՅՆ ՔԱՌԱԿՈՒՍԻՆԵՐԻ ՄԵԹՈԴ, սխալների տեսության մեթոդներից, որով անհայտ մեծությունը գնահատում են պատահական սխալներ պարունակող չափումների հիման վրա: Կիրառվում է նաև տրված ֆունկցիան այլ (ավելի պարզ) ֆունկցիաներով մոտավոր ներկայացման համար:

ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ, Փոքր Ասիա թ–կողմում՝ Թուրքիայում: Գերակշռում են 800–1500 *մ* բարձր–ները: Ներքին մասն զբաղեցնում է Անատոլիական սարահարթը, հս–ում՝ Պոնտ., հվ–ում Տավրոսի լ–ներն են: Բարձր.՝ մինչև 3916 *մ* (Էրջիաս հրաբուխ): Արլ–ում Փ. բ. աստիճանաբար անցնում է Հայկ. լ–աշխարհին: Ներքին շրջաններում գերակշռում են կիսաանապատներն ու տափաստանները, լեռների արտաքին լանջերին՝ անտառներն ու միջերկրածով. թփուտները:

ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ԳԵՏՆԱՍԿՅՈՒՌ (Sternophilus xanthoprymnus), սկյուռանմանների ընտանիքի գետնասկյուռներ սեռի կրծող կենդանի: Մարմնի երկ.՝ մինչև 290, պոչինը՝ մինչև 59 *սմ*, կ. զ.՝ մինչև 430 *գ*: Տարածված է ՀՀ արմ. և հսարմ. մարզերում, գերադասում է խոպան հողերը: Հիմնականում կանաչակեր է, բայց նախքան ձմեռ. քուն մտնելը պահեստավորում է զանազան մշակաբույսերի սերմեր: Փ. գ–ի շատանալու դեպքում վնասում է գղտ–յանը: Կարող է լինել ժանտախտի, տուլարեմիայի և մարդու այլ վարակների պատահական կրող:

ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ԳՈՐՏ (Rana macrocnemus), *գորտերի* ընտանիքի իսկական գորտեր սեռի գորտ: ՀՀ–ում տարածված է բոլոր մարզերում (բացառությամբ՝ Արմավիրի): Հիմնականում բազմաքանակ է: Հանդիպում է հիմնականում հոսող ջրավազանների ափամերձ վայրերում: Մարմնի երկ.՝ 7–8 *սմ*: Արտաքնապես նման է *լճագորտին*: Մնվում է մանր որդերով, փափկամարմիններով և միջատներով: Օգտակար է. ոչնչացնում է վնասատու միջատներին: Հաճախ խնամում են անազատ պայմաններում՝ որպես գեղազարդիչ տեսակ, օգտագործում են ԳՀ նպատակներով:

ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ԾԱՌԱԳՈՐՏ (Hula savygnyi), *ծառագորտերի* ընտանիքի իսկական ծառագորտեր սեռի գորտ: Մարմնի երկ.՝ 1,3–4,7 *սմ*: Արուների արտաքին ծնոտի տակ կա մուգ գույնի ձայնապարկ, որի միջոցով արձակում են բարձր, աղոցելու նման ձայներ: Վարում է մթնշաղ. ու գիշեր. կենսակերպ: Օգտակար է. ոչնչացնում է վնասատու փափկամարմիններին և միջատներին: Հաճախ խնամվում է անազատ պայմաններում՝ որպես գեղազարդիչ տեսակ:

ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ՀԱՄՍՏԵՐ (Mesocricetus brandti), համստերանմանների ընտանիքի համստերների ենթաընտանիքի կրծող կաթնասուն կենդանի: Մարմնի երկ.՝ մինչև 7,7, պոչինը՝ 3,1 *սմ*, կ. զ.՝ 216 *գ*: ՀՀ–ում տարածված է բոլոր կլիմ. գոտիներում՝ բացի կիսաանապատայինից և անտառայինից: Մնվում է խոտաբույսերի վերին, երբեմն՝ ստորգետնյա մասերով, սերմերով: Ակտիվ է մթնշաղին: Մեծ վնաս է հասցնում գղտ–յանը: Կարող է լինել բնական օջախ. T վարակների կրող:

ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ՃԱԳԱՐԱՄՄՈՒԿ (Allactaga euphratica), **լեռնային ճագարամուկ**, ճագարամկների ընտանիքի կաթնասուն կենդանի: Տարածված է Արարատյան դաշտում, Կոտայքում, Սևանի ավազանում, Վայքում և Սյունիքի հս. մասերում: Մարմնի երկ.՝ մինչև 150, պոչինը՝ մինչև 240 *սմ*, կ. զ.՝ մինչև 115 *գ*: Քչաքանակ է: Մնվում է սերմերով, բույսերի վեր– և ստորգետնյա մասերով: Գործունյա է մթնշաղին և գիշերը:

ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ՄՈՂԵՍ (Cacerta parva), իսկական մողեսների ընտանիքի սողուն: Մարմնի երկ.՝ մինչև 6,2 *սմ*, պոչը՝ գրեթե կրկնակի երկար: ՀՀ–ում հանդիպում է Շիրակի, Արագածոտնի, Լոռու և Տավուշի մարզերում: Օգտակար է. ոչնչացնում է վնասատու միջատներին: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ՏՐԻՏՈՆ (Triturus vittatus), պոչավոր երկկենցաղների կարգի *սալամանդրների* ընտանիքի մողես: ՀՀ–ում հայտնի է միայն Լոռու մարզում: Մարմնի երկ.՝ 1,5–8,8 *սմ*, պոչը՝ գրեթե նույն երկյան: Վարում է հիմնականում մթնշաղ. ու գիշեր. կենսակերպ: Օգտակար է. ոչնչացնում է վնասատու փափկամարմիններին ու միջատներին: ՀՀ–ում որսում են մեծ քանակներով, ինչի հետևանքով կարող է անհետանալ: Հաճախ խնամում են անազատ պայմաններում՝ որպես գեղազարդիչ տեսակ: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ՏՐԻՏՈՆՆ (Triturus vittatus), պոչավոր երկկենցաղների կարգի *սալամանդրների* ընտանիքի մողես: ՀՀ–ում հայտնի է միայն Լոռու մարզում: Մարմնի երկ.՝ 1,5–8,8 *սմ*, պոչը՝ գրեթե նույն երկյան: Վարում է հիմնականում մթնշաղ. ու գիշեր. կենսակերպ: Օգտակար է. ոչնչացնում է վնասատու միջատներին: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ԳԵՏՆԱՍԿՅՈՒՌ (Sternophilus xanthoprymnus), սկյուռանմանների ընտանիքի գետնասկյուռներ սեռի կրծող կենդանի: Մարմնի երկ.՝ մինչև 290, պոչինը՝ մինչև 59 *սմ*, կ. զ.՝ մինչև 430 *գ*: Տարածված է ՀՀ արմ. և հսարմ. մարզերում, գերադասում է խոպան հողերը: Հիմնականում կանաչակեր է, բայց նախքան ձմեռ. քուն մտնելը պահեստավորում է զանազան մշակաբույսերի սերմեր: Փ. գ–ի շատանալու դեպքում վնասում է գղտ–յանը: Կարող է լինել ժանտախտի, տուլարեմիայի և մարդու այլ վարակների պատահական կրող:

ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ԳՈՐՏ (Rana macrocnemus), *գորտերի* ընտանիքի իսկական գորտեր սեռի գորտ: ՀՀ–ում տարածված է բոլոր մարզերում (բացառությամբ՝ Արմավիրի): Հիմնականում բազմաքանակ է: Հանդիպում է հիմնականում հոսող ջրավազանների ափամերձ վայրերում: Մարմնի երկ.՝ 7–8 *սմ*: Արտաքնապես նման է *լճագորտին*: Մնվում է մանր որդերով, փափկամարմիններով և միջատներով: Օգտակար է. ոչնչացնում է վնասատու միջատներին: Հաճախ խնամում են անազատ պայմաններում՝ որպես գեղազարդիչ տեսակ, օգտագործում են ԳՀ նպատակներով:

ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ԾԱՌԱԳՈՐՏ (Hula savygnyi), *ծառագորտերի* ընտանիքի իսկական ծառագորտեր սեռի գորտ: Մարմնի երկ.՝ 1,3–4,7 *սմ*: Արուների արտաքին ծնոտի տակ կա մուգ գույնի ձայնապարկ, որի միջոցով արձակում են բարձր, աղոցելու նման ձայներ: Վարում է մթնշաղ. ու գիշեր. կենսակերպ: Օգտակար է. ոչնչացնում է վնասատու փափկամարմիններին և միջատներին: Հաճախ խնամվում է անազատ պայմաններում՝ որպես գեղազարդիչ տեսակ:

ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ՀԱՄՍՏԵՐ (Mesocricetus brandti), համստերանմանների ընտանիքի համստերների ենթաընտանիքի կրծող կաթնասուն կենդանի: Մարմնի երկ.՝ մինչև 7,7, պոչինը՝ 3,1 *սմ*, կ. զ.՝ 216 *գ*: ՀՀ–ում տարածված է բոլոր կլիմ. գոտիներում՝ բացի կիսաանապատայինից և անտառայինից: Մնվում է խոտաբույսերի վերին, երբեմն՝ ստորգետնյա մասերով, սերմերով: Ակտիվ է մթնշաղին: Մեծ վնաս է հասցնում գղտ–յանը: Կարող է լինել բնական օջախ. T վարակների կրող:

ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ՃԱԳԱՐԱՄՄՈՒԿ (Allactaga euphratica), **լեռնային ճագարամուկ**, ճագարամկների ընտանիքի կաթնասուն կենդանի: Տարածված է Արարատյան դաշտում, Կոտայքում, Սևանի ավազանում, Վայքում և Սյունիքի հս. մասերում: Մարմնի երկ.՝ մինչև 150, պոչինը՝ մինչև 240 *սմ*, կ. զ.՝ մինչև 115 *գ*: Քչաքանակ է: Մնվում է սերմերով, բույսերի վեր– և ստորգետնյա մասերով: Գործունյա է մթնշաղին և գիշերը:

ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ՄՈՂԵՍ (Cacerta parva), իսկական մողեսների ընտանիքի սողուն: Մարմնի երկ.՝ մինչև 6,2 *սմ*, պոչը՝ գրեթե կրկնակի երկար: ՀՀ–ում հանդիպում է Շիրակի, Արագածոտնի, Լոռու և Տավուշի մարզերում: Օգտակար է. ոչնչացնում է վնասատու միջատներին: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ՏՐԻՏՈՆ (Triturus vittatus), պոչավոր երկկենցաղների կարգի *սալամանդրների* ընտանիքի մողես: ՀՀ–ում հայտնի է միայն Լոռու մարզում: Մարմնի երկ.՝ 1,5–8,8 *սմ*, պոչը՝ գրեթե նույն երկյան: Վարում է հիմնականում մթնշաղ. ու գիշեր. կենսակերպ: Օգտակար է. ոչնչացնում է վնասատու միջատներին: ՀՀ–ում որսում են մեծ քանակներով, ինչի հետևանքով կարող է անհետանալ: Հաճախ խնամում են անազատ պայմաններում՝ որպես գեղազարդիչ տեսակ: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՓՈՒՅՈՒԿԳԵՐԵՆ, փոյուգացիների լեզուն: Որոշ մասնագետներ Փ. համարում են հայ–ին ազգակից լեզու, մյուսները մերձեցնում են հուն. լեզուներին: Փ. վկայված է Փոքր Ասիայի երկու ժամանակաշրջանների արձանագրություններով և հուն. ու հռոմ. հեղինակների երկերի մեկնություններով: Հին փոյուգ. տեքստերը վերաբերում են մ. թ. ա. VIII–V դդ–ին, նոր փոյուգ. տեքստերը՝ մ. թ. II–III դդ–ին:

ՓՈՒՅՈՒԳԻԱ, հնագույն պետություն Փոքր Ասիայի հս–արմ–ում՝ Լիդիայի և Բյուզանդիոնի հարևանությամբ: Հույներին հայտնի «համասիական» առաջին տեղությունները ից էր: Մ. թ. ա. X–VIII դդ–ում Փ. թագավորություն էր Գորդիոն (թագավոր Գորդիասի անունով) մայրաքաղաքով, որի ծաղկուն քաղաքների, զարգացած մշակույթի մասին հիշատակել է *Հոմերոսը*:

ՓՈՇՆԻ (Calitis), թեղագզիների ընտանիքի տերևաթափ ծառերի կամ թփերի ցեղ: Հայտնի է մոտ 70 տեսակ (բարեխառն և մերձարևադարձ. գոտիներում), ՀՀ–ում՝ 2՝ Արագածոտնի, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի և այլ մարզերում: Պտուղներն ուտելի են:

ՓՍԱՆՔ, **Բսանք**, **Փսանաց գավառ**, գվոկ Բիթլիսի նահանգ–ի *Սասունն* գվո–ում՝ Մարութա լ–ան արլ. կողմում: ՍՀՊ–ի նախօրեին Փ. ուներ մոտ 3,5 հզ. հայ բն.: 1915–ին Փ–ի հայերը մասնակցել են Սասունի ինքնապաշտպ–յանը: Նրանց զգալի մասը փրկվել է և ապաստանել Արլ. Հայաստանում:

ՓՍԻԽՈ… (հուն.՝ psyche – հոգի), բարդ բառերի մաս. օգտագործվում է *հոգեկանին* առնչվող տերմիններում (օր.՝ *փսիխոպաթիա*, փսիխոթերապիա ևն):

ՓՍԻԽՈԱՍԹԵՆԻԱ, (< *փսիխո*… և հուն.՝ astheneia – թուլություն), 1. *անհուն վիճակներով* բնորոշվող նևրոզ: 2. Անձի առանձնահատուկ խառնվածք (փսիխոպաթիայի ձև). բնորոշ են իր ուժերի նկատմամբ անվստահությունը, մշտ. կասկածները, տագնապները ևն:

ՓՍԻԽՈԴԻՍԼԵՊՏԻԿ ՄԻՋՈՑՆԵՐ, հալյուցինոգեններ, հոգեկան խանգարումներ առաջացնող բնական և սինթետիկ նյութեր:

ՓՍԻԽՈՀԻԳԻԵՆԱ, բժշկագիտ–յան բաժին. ուսումնասիրում է արտաքին միջավայրի ազդեցությունը մարդու հոգեկանի վրա, մշակում հոգեկան առողջության պահ–

պանման և ամրապնդման միջոցներ, կանխարգելում հոգեկան հիվանդությունները:

ՓՍԻԽՈՊԱԹԻԱ, անձի աննորդաշնակություն՝ պայմանավորված մարմնակազմվածքագենետիկ. հատկանիշներով: Դրսևորումները բազմազան են և որոշում են Փ–ի տարբեր ձևերի առանձնացումը (փսիխոսթենիկներ, հիսթերիկ, դյուրագրգիռ, պարանոիկ փսիխոպաթներ ևն): Փ–ի և «նորմալ խառնվածքների» միջև պարզորոշ սահման չկա:

ՓՍԻԽՈՊՐՈՖԻԼԱԿՏԻԿԱ, *հոգևորժութ–յան* բաժին. զբաղվում է հոգեկան հիվանդությունների կանխման և քրոնիկ. ձևերի դրանց անցման միջոցների մշակմամբ ու իրականացմամբ, նաև հոգեկան հիվանդների վերականգնման հարցերով:

ՓՍԻԽՈՍՈՄԱՏԻԿԱ (< *փսիխո*... և հուն.՝ soma – մարմին), լայն իմաստով՝ մարմն. հիվանդությունների բացատրության հայեցակարգ, երբ հատուկ ուշադրություն է դարձվում հոգեկան գործոնների դերին: Նեղ իմաստով՝ ժամանակակից ամերիկ. և արևմտաեվրոպ. բժշկագիտ. հոսանք, որը ծագել է, այսպես կոչված, օրգանների նևրոզների և օրգ. հիվանդությունների մեկնաբանման և բուժման հանդեպ հոգեվերլուծության կիրառման հիմքի վրա:

ՓՍԻԽՈՏՐՈՊ ՆՅՈՒԹԵՐ (< *փսիխո*... և հուն.՝ tropos – պտույտ, ուղղություն), դեղանյութեր, որոնք առավելապես ազդում են մարդու հոգեկան ֆունկցիաների վրա. հակաընկճում., հոգեխթանիչ, ուժեղ հակափսիխոզ. (նեյրոլեպտիկներ), թույլ հակափսիխոզ. (տրանկվիլիզատորներ), հանգստացնող (սեդատիվներ) դեղանյութերը:

ՓՏԱԽՏ, **գանգրենա** (հուն.՝ gangraine – փտում, մեռուկացում), հյուսվածքների մեռուկացումը վնասվածքների կամ արյունատար անոթի խցանման (օր.՝ թրոմբով) հետևանքով՝ հետագա վարակի միացմամբ: Տարբերում են չոր, թաց (նեխական), գազ. Փ–ներ ևն:

«ՓՐԻՆԹԻՆՖՈ», գրահրտչ. համալիր, ստեղծվել է 1996–ին Երևանում: Հիմնադիր–տնօրեն՝ Արամ Մեհրաբյան: 2004–ից համագործակցում է *«Սարգիս Խաչենց»* հրտչ–յան հետ: Լույս է ընծայում համաշխ. փիլ. մտքի, գրկ–յան, երաժշտության, արվ–ի վերաբերյալ գրքեր:

ՓՐԻՆՍԹՈՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ԱՄՆ–ի հնագույն համալսարաններից (Նյու Ջերսի նինգ), ֆիզմաթ., տեխ. և տիեզ. հետազոտությունների խոշոր ԳՀ կենտրոն: Հիմնադրվել է 1746–ին, 1896–ից՝ համալսարան: 2015–ին ուներ ավելի քան 6 հզ. ուսանող:

ՓՐԻՍԹԼԻ (Priestley) Ջոն Բոյնթոն (1894–1984), անգլիացի գրող, դրամատուրգ, թատեր. ռեժ., գրաքննադատ: Հեղինակ է «Բարի ընկերներ» (1929), «Հրեշտակի փոդոցը» (1930), «Նրանք թափառում են քաղաքում» (1936), «Խավարում Գրեթլիում» (1942), «Լոնդոնյան փակուղի» (1969) և այլ վեպերի, «Վտանգավոր շրջադարձ» (1932), «Ժամանակը և Քոնվեյների ընտանիքը» (1937) և այլ պիեսների, «Ճգնաժամ Կարֆեյների տանը» (1975) պատմվածքների ժող–ի, «Բարձր պարսպի հետևում» (1972) ինքնակենսագր. երկի, նաև վիպակների: Փ–ի ստեղծագործությունների հիման վրա նկարահանվել են կինոնկարներ:

ՓՐԿԶԻ ԵԿԵՂԵՑԻ Անիի, ճարտ. հուշարձան: Կառուցել է իշխան Աբլղարիբ Պահլավունին 1036–ին (ճարտ.՝ հավանաբար՝ *Տրդատ*): Երկաստիճան ծավալի ստորին աստիճանի 15 *մ* տրամագծով արտաքին պարագիծը 19–նիստանի է, որտեղ ներգծված է 8 խորան: Եկեղեցու արտաքին ճակատները որմնակամարներով են, ներսի պատերը՝ որմնանկարներով: Կից եղել է զանգակատուն (1291, չի պահպանվել): Ներկայի գմբեթը վերակառուցել է իշխան Վահրամ Աթաբեկը (1342), ստորին ծավալի շարքերը՝ նորոգվել և ամրացվել են Նիկողայոս *Մառի* ջանքերով (1913): 1957–ին փլվել է եկեղեցու արլ. կեսը:

«ՓՐԿՈՒԹՅՈՒՆ», հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն, ՀԿ, ստեղծվել է 1997–ին Երևանում: Նպատակը հաշմանդամ և մտավոր խնդիրներ ունեցող երեխաներին ու երիտասարդներին, նրանց ընտանիքների սոցիալ., կրթ., առողջապ. խնդիրների լուծմանն աջակցելն է: «Փ.»–յանը կից 1999–ից գործում է ցերեկային խնամքի և առօրյա զբաղվածության կազմակերպման կենտրոն՝ տարբեր խմբակներով, 2005–ից՝ ատամնաբուժարան: Համագործակցում է տարբեր կազմ–յունների ու անհատների, կլինիկաների, հանրակրթ. և օժանդակ դպրոցների, բուհերի համապատասխան բաժինների հետ:

ՓՐՈՎԻԴԵՆՍ (Providence), ք. ԱՄՆ–ում, Ռոդ Այլենդ նինգ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 178 հզ. (2010):

ՓՐՓՐԱՄԻՋԱՏՆԵՐ, ցիկադայինների կարգի հավասարաթև միջատների ընտանիք: Երկ.՝ 3–10 *մմ*: Հայտնի է ավելի քան 1300 տեսակ: Ապրում են բույսերի վրա, սնվում նրանց հյութերով: Թրթուրները փրփուր են արտազատում, որտեղ էլ ապրում են (այստեղից՝ անվանումը): Թթքային Փ. վնասում է մորենին, հաղարջենին, պտղատու ծառերը, վարդենին:

ՓՐՓՐԱՊԼԱՍՏՆԵՐ, նյութերի տեսակ՝ գազալեցուն (բջջավոր) պլաստիկներ, որոնք ունեն անհամեմատ փոքր խտություն և օգտագործվում են որպես ձայնա– և ջերմամեկուսիչներ:

ՓՐՓՐԱՔԱՐ, բջջավոր ապակի, որն ստացվում է ջերմամշակման ժամանակ մանրացված ապակենման ապարների (պեռլիտ. տուֆ, պեմզա ևն) և նատրիումի հիդրօքսիդի խառնուրդի փքումով: Օգտագործվում է որպես ջերմա– և ձայնամեկուսիչ ու դեկորատիվ նյութ, թեթև բետոնի լցանյութ:

ՓՐՓՐՈՒԿ (Filipendula), 1. (բուսաբ.) **հարսի պսակ**, վարդազգիների (վարդածաղիկներ) բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 15 տեսակ՝ Հս. կիսագնդի բարեխառն և արևադարձ. շրջաններում, ՀՀ–ում՝ 2՝ Լոռու, Արագածոտնի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի և այլ մարզերում: Աճում է գետափերին, խոնավ մարգագետիններում, թփուտներում: Գեղազարդիչ է: 2. (Կենսբ.) **ձուկ** (Eleginus navaga), ձողաձուկազգիների ընտանիքի ծով. ձուկ, մարմնի երկ.՝ մինչև 47 *սմ*, կ. զ.՝ 700 *գ*:

ՓՈՒԹ, զանգվածի (քաշի) ռուս. չափ. 1 *Փ* = 40 *ֆունտ* = 16,38 *կգ*:

ՓՈՒԹԿՈՒՎԱՆԴ, **Սարիվանք**, **Մոկսի Սուրբ Գևորգ վանք**, ճարտ. համալիր Վասպուրականում՝ Եղերով լ–ան արլ. լանջին: Հիմնադրվել է X–XI դդ–ում, հիշատակվում է 1317–ից: Սբ Գևորգ եկեղեցին զույգ որմնասյուներով թաղածածկ դահլիճ է: 1601–ին կից կառուցվել է ժամատունը, 1887–ին՝ ուղղանկյուն, առանց խորանի մատուռը: Համալիրը համեմատաբար լավ է պահպանված:

ՓՈՒԼ, որևէ շարժընթացի (հաս., երկրբ., ֆիզ. ևն) զարգացման ընթացքում որոշակի պահ: Ֆիզիկայում և տեխնիկայում հատկապես կարևոր է տատանման Փ.՝ ժամանակի որոշակի պահին տատանող. շարժընթացի վիճակը (ներդաշնակ տատանումների Փ., փոփոխ. հոսանքի Փ. ևն):

ՓՈՒԼԱՅԻՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ, $V_{փ}$ արագությունը, որով տարածության մեջ շարժվում է y = Asin φ հարթ մեներանգ. ալիքի φ փուլը: Այստեղ A–ն ամպլիտուդն է, $\varphi = 2\pi(\frac{t}{T} - \frac{x}{\lambda})$ ալիքի փուլը (λ–ն՝ ալիքի երկ–յունը, x–ը՝ հեռ–յունն ալիքի աղբյուրից, T–ն՝ տատանման պարբերությունը, t–ն՝ ժամանակը): Եթե փուլը՝ φ = const, ապա $V_{փ} = \lambda/T$:

ՓՈՒԼԱՅԻՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, **ինքնափուլավորում**, ռեզոնանս. արագացուցիչներում փուլ. կայունության առաջացում՝ լիցքավորված մասնիկների և նրանց էներգիայի պահանջվող աճն ապահովող մագնիս. դաշտերի փոխազդեցության դեպքում: 1944–45–ին հայտնաբերել է Վ. *Վեկսլերը* և նրանից անկախ՝ Է. Մ. *Մաքմիլանը*: Էներգիան աճում է ԲՀ ռեզոնանս. բջիջներում, որոնցում արտաքին աղբյուրի միջոցով հարուցվում են էլեկտրամագնիս. տատանումներ, և առաջանում է փոփոխակիորեն մասնիկներն արագացնող ու դանդաղեցնող լայնական էլ. դաշտ: Մասնիկների ու դաշտի փուլերի և մասնիկների անհրաժեշտ համաժամանակացման համընկնման դեպքում մասնիկներն ստանում են էներգիա:

ՓՈՒՂԻՆՅԱՆ Նիկողայոս (1834–1880), դրամատուրգ: Հեղինակ է Թիֆլիսի հայկ. միջավայրը պատկերող ֆարս–վոդևիլների, «Հազար թումանանոց կարա», «Դալալ Ղաղո» (երկուսն էլ՝ 1863) պիեսների: Փոխադրել է Մոլիերի «Բռնի ամուսնություն» կատակերգությունը, որը բեմադրվել է «Վուր տրաքվիս, պիտի պսակվիս» վերնագրով:

«ՓՈՒՆՋ», ազգ., պատմ., կրոն., բարոյախոս. պարբերաթերթ (1866–1908, Կ. Պոլիս): Տնօրեն–խմբ–ներ՝ Համբարձում և Սիմոնիկ Ալաճաճյաններ, Սիմոն Զեռմլեքճյան:

«ՓՈՒՆՋ», պատանեկան գր–գեղ. պարբ. (1925–46, Ալեքսանդրիա, ապա՝ Կահիրե): Խմբ–ներ՝ Մելքոն Քարամյան, Լևոն Ա.ճեմյան:

«ՓՈՒՆՋ», գրկ–յան և արվ–ի պարբ. (1933–34, Աթենք): Խմբ–ներ՝ Գ. Ազիզյան, Օննիկ Թոփուզյան:

ՓՈՒՇԹՈՒ, **աֆղաններեն**, *աֆղանների* լեզուն, Աֆղանստանի պետ. լեզուներից (դարիի հետ): Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի հնդիրան. ճյուղի արլ. իրան. խմբին: Գրավոր հնագույն հուշարձաններն ավանդվել են XIII դ–ից: Գրի հիմքում արաբ. այբուբենն է:

ՓՈՒՇՄԱՆ (Փուշմանյան) Հովսեփ Թովմասի (1877–1966), նկարիչ: Ինքնատիպ նատյուրմորտներում («Նատյուրմորտ: Սուրբ ձին», 1930–40–ական թթ.) Փ. պատկերել է հնագույն զարդեր, իննկամաններ, հայկ. մագաղաթե ձեռագրեր, արլ. արձանիկներ ևն: Լավագույն գործերից են նաև «Շեյխի դուստրը», «Երբ իջնում է երեկոն», «Նկարչի կնոջ դիմանկարը», «Կենաց ակունքը», «Արևի ճաճանչները», «Կյանքի ոսկյա մայրամուտը» ևն (վերջին չորսը՝ ՀԱՊ–ում):

ՓՈՒՓՈՒԼԱՎՈՐ ԱՐՏՈՒՅՏ (Galerida cristata), *արտույտների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է: Մարմնի երկ.՝ 17, թևերի բացվածքը՝ 29–38 *սմ*, կ. զ.՝ 45 *գ*: Ապրում է կիսաանապատներից մինչև լ–տափաստաններ: Մնվում է խոտաբույսերի սերմերով, անողնաշարներով:

ՓՈՒՓՈՒԼԱՎՈՐ ԵՐԱՇՏԱՀԱՎ (Parus cristatus), *երաշտահավերի* ընտանիքի թռչուն: Հազվագյուտ չվահյուր է: Մարմնի երկ.՝ 11,5, թևերի բացվածքը՝ 17–20 *սմ*, կ. զ.՝ 9–14 *գ*: Ապրում է ասեղնատերև ու խառնանտառներում: Հաճախ հանդիպում է անտառ. այլ մանր թռչունների երամներում: Մնվում է անողնաշարներով, հատապտուղներով, սերմերով: 1979–ին գրանցվել է Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում՝ որպես հազվագյուտ տեսակ ՀՀ տարածքում:

ՓՈՒՓՈՒԼԱՎՈՐ ԿԿՈՒ (Clamator glandarius), կկվանմանների կարգի *կկուների* ընտանիքի թռչուն: Պատահական չվահյուր է: Մարմնի երկ.՝ 38–40, թևերի բացվածքը՝ 58–61 *սմ*, կ. զ.՝ 120–150 *գ*: Երկար պոչով և աչքի զարնող փուփուլով կկու է: Ապրում է ուռուտներով գետափերին, նոսր ծառուտներում: Մնվում է անողնաշարներով: Հայաստանում հայտնաբերվել է 1978–ին, կրկնակի գրանցումը՝ 2005–ին:

ՓՈՒՓՈՒԼԱՎՈՐ ՍՈՒՋԱԲԱԴ (Aythya fuligula), *բադերի* ընտանիքի թռչուն: Նստակայաց է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 40–47, թևերի բացվածքը՝ 67–73 *սմ*, կ. զ.՝ 0,75–1,2 *կգ*: Սևանի ավազանում և Արարատյան դաշտի լճակներում թվաքանակը նվազել է: Սիրող. և մարզ. որսորդության թռչուն է:

ՓՈՒՓՈՒԼԱՎՈՐ ՓՈՂ, իսկական *փոկերի* ընտանիքի ծով. կաթնասուն կենդանի: Արուի մարմնի երկ.՝ մինչև 2,8 *մ*, կ. զ.՝ մինչև 300 *կգ*, էգերն ավելի փոքր են: Արուի քթի խոռոչում կա մաշկապարկ (փուփուլ), որը գրգռվելիս ուռչում է: Ապրում է Ատլանտ. օվկ–ի հս. մասում:



Ք, հայ. այբուբենի 36–րդ տառը, անվանումը՝ քե: Ունի *գրչագիր*, *երկաթագիր*, *բոլորգիր*, *շղագիր*, *նուրբգիր* տառատեսակները: Հայ–ի հետնալեզվային շնչեղ խուլ պայթական բաղաձայն հնչյուն (հնչույթ) է: Թվային արժեքը՝ 9000:

ՔԱԲՈՒԼ, Աֆղանստանի մայրաքաղաքը և համանուն վիլայեթի վարչ. կենտրոնը: Բն.՝ 2,3 մլն (2010): Տրանսպորտ. հանգույց է, ունի օդանավակայան: Կան մետաղամշակման, թեթև, սննդի արդ–յան և այլ ձեռն–ներ: Առաջին անգամ հիշատակվել է մ. թ. II դ–ում: XVI դ–ի սկզբին եղել է Մեծ Մողոլների պետության, 1773/74–1818–ին՝ Դուռանիների տերության մայրաքաղաքը: Շարտ. հուշարձաններից են հին Բալա Հիսսար միջնաբերդը, միջնադար. արվարձանային Բաղի Բաբուր պուրակները՝ Շահ Ջահանի մզկիթով (XVII դ.):

ՔԱԲՈՒԽԻԵՒ ԲԱԲԲԱՆ, հայ–ի «կը» ճյուղի բարբառ: Խոսվել է Ջերել–Մուսայի շրջանի Քաբուսիե գ–ում: Ունի եռաստիճան (բ>պ, պ>բ, փ) բաղաձայն. համակարգ:

ՔԱԴԴԱՖԻ Մուամմար (Մուամմար բեն Մուհամմեդ Աբու Մենյար Աբդել Սալամ բեն Համադ ալ–Քադդաֆի, 1942–2011), լիբիացի պետ. և քաղ. գործիչ: Լիբիայի վարչապետ՝ 1970–72–ին: Լիբիայի հեղ. կուս–յան առաջնորդ՝ 1969–ից: Ինքնակալության տապալումից հետո (1969)՝ Հեղ. հրամանատարության խորհրդի նախագահ, 1970–ից՝ Լիբիայի ԶՈՒ գերագույն գլխ. հրամ., 1972–77–ին՝ Արաբ. սոց. միության նախագահ, 1977–79–ին՝ Համընդ. ժողովրդ. կոնգրեսի գլխ. քարտուղար: 1979–ից՝ Մեպ–տեմբերմեկյան սոց. ժող. լիբիական արաբ. Ջամահիրիայի եղբայր. առաջնորդ և ղեկ.: Կողմնակից է եղել համաարաբ. միավորում ստեղծելուն, աջակցել է ազգ–ազատագր., հեղ. և ահաբեկչ. կազմ–յություններին: Սպանվել է «արաբական գարուն» կոչված ամերիկ. արշավի օրերին:

ՔԱԹԱՆԵԱՆ Արամ Գրիգորի (1926–1998), դիրիժոր: ՀՀ ժող. արտիստ (1976): ԵՊԿ պրոֆ. (1987): 1958–ից՝ ԵՕԲԹ–ի դիրիժոր (1964–70–ին՝ գլխ. դիրիժոր, 1974–82–ին՝ նաև գեղ. ղեկ.), 1970–73–ին՝ Հայաստանի պետ. սիմֆ. նվագախմբի գլխ. դիրիժոր և գեղ. ղեկ.: Ղեկավարել է Ի. Ֆ. Ստրավինսկու «Էդիպ արքա» օպերա–օրատորիան (1963), Լ. Բեթհովենի «Վեստասյդյան պատմություն» երաժշտ. դրաման (1963), Ռ. Վագների «Տանհոյզեր» (1965), Ջ. Կ. Մենոտտիի «Հյուպատոսը» (1966), Վ. Բելլինիի «Նորմա» (1975), Վ. Ա. Մոցարտի «Դոն Ժուան» (1979) օպերաները, Է. Հովհաննիսյանի «Հավերժական կուռք» (1966), Գ. Եղիազարյանի «Անուրջների լիճը» (1968), «Արա Գեղեցիկ և Շամիրամ» (1982) և այլ բալետներ:

ՔԱԹԱՆԵՅԱՆ Հովհաննես Բաբայի (1924–1984), գրաֆիկ: Հեղինակ է «Հիսուսը», «Հիսուսի փորձությունը», «Ուգոլինոյի մահը» և այլ գործերի: Թիֆլիսի թատրոնում ձևավորել է ներկայացումներ:

ՔԱԹԱՆԵՅԱՆ Ռուբեն Պավելի (1881–1966), կուս. գործիչ, ԽՍՀՄ՝ արտաքին հետախուզության հիմնադիր–ղեկ–նեբից: ՄԳՀ պրոֆ.: 1920–22–ին՝ ՌԿ(բ)Կ ԿԿ բաժնի վարիչ, Համառուսաստան. արտակարգ հանձնաժողովի արտ. բաժնի պետ, 1922–38–ին՝ ԽՍՀՄ գլխ. հյուպատոսը Բեռլինում: 1938–ին անհիմն բռնադատվել է, 1955–ին՝ արդարացվել:

ՔԱԹԱՆԵՅԱՆ Վասիլի Վասիլիի (1924–1999), կինոռեժ.: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1988): 1950–90–ին՝ Մոսկվայի վավերագր. ֆիլմերի կենտր. ստուդիայի ռեժ. («Մերգեյ Էյզենշտեյն», 1958, «Արկադի Ռայկին», 1967, ևն): Մասնակցել է «Մեծ հայրենականը» կինոէպոպեայի ստեղծմանը («Պարտիզանները: Պատերազմ թշնամու թիկունքում», 1979): Հեղինակ է «Փարաջանով: Հավերժական տոնի գինը» (ռուս., 2001) և այլ գրքերի: Լենինյան մրց. (1980):

ՔԱԹԱՐ, Քաթարի Պետություն, պետություն Հվ–արմ. Ասիայում՝ Արաբ. թ–կղզու արլ–ում: Սահմանակից է Սաուդյան Արաբիային: Տարածքը՝ 11,5 հզ. *կմ²*, բն.՝ 1,9 մլն (2013): Մայրաքաղաքը՝ *Դոհա*: Պետ. լեզուն՝ արաբ.: Կառավարման ձևը՝ բացարձակ միապետ.: Պետության գլուխը էմիրն է, օրենսդիր մարմինը՝ Խորհրդակց. ասամբլեան: Կազմված է 10 վարչ. մունիցիպալիտետներից: Հավատացյալների մեծ մասը սուննի մահմեդական է: Անդամակցում է ՄԱԿ–ին, ԱՊԼ–ին ևն: Տնտ–յան հիմքը նավթի ու գազի արտահանումն է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 144,4 հզ. ԱՄՆ դոլար է (2016): Արտահանում է նավթամթերք, բնական գազ, հանք. պարարտանյութեր, պողպատի գլանվածք ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, սննդամթերք, քիմիկատներ ևն: Դրամ. միավորը՝ Ք–ի ռիալ:

VII դ–ում Ք. մտել է Արաբ. խալիֆության, X–XII դդ–ում՝ կարմաթների պետության կազմի մեջ: XIII դ–ում կախվածության մեջ է եղել Օմանից: 1320–ին զավթել է Օրմուզի շեյխը: XV դ–ի 2–րդ կեսից եղել է Օսմ. կայսրության կազմում (XVI դ–ում կարճ ժամանակով Ք–ում հաստատվել են պորտուգալացիներ): XVIII դ–ի 2–րդ կեսին Ք–ի տարածքում ստեղծվել է ոչ մեծ իշխանություն, որը XIX դ–ի վերջին միավորել է ամբողջ Ք.: 1868–ին Մեծ Բրիտանիան Ք–ին պարտադրել է անիրավահավասար պայմանագիր: Ք–ի հիմնադիրը համարվում է շեյխ Կասեմ բին Մուհամմադ ալ–Թանին (կառավարել է 1878–1913–ին): 1916–71–ին հաստատվել է Մեծ Բրիտանիայի պրոտեկտորատ: 1970–ի ապրիլի 2–ին ընդունվել է ժամանակավոր սահմանադրություն: 1971–ին Ք. հռչակվել է անկախ պետություն: 2003–ին ընդունվել է նոր սահմանադրություն: 1995–ին Ք–ի էմիր է դարձել Համադ բին Խալիֆա ալ–Թանին, որը 2013–ի հունիսի

25-ին հեռացել է գահից: Նրան հաջորդել է որդին՝ Թամիմ բեն Համիդ ալ-Թանին:

Ներկայում Ք-ում ապրում են 800–1500 հայեր, որոնք 1990-ական թթ-ից այստեղ եկել են Սիրիայից, Լիբանանից և արաբ. մյուս երկրներից: Մեծ մասը ներառված է ՄՏԿԿ Քուվեյթի և Արաբ. ծոցի երկրներ փոխանորդության մեջ:

ՔԱԹՐԵՄԵՐ (Quatremère) Մարք Էթիեն (1782–1857), ֆրանսիացի արևելագետ: Հեղինակ է «Եգիպտական գրականության և եգիպտերենի ուսումնասիրություններ» (1808), «Դիտողություններ Եգիպտոսի աշխարհագրական մի քանի կետերի մասին» (1812) և այլ աշխ-ների, նաև հայ. մի բառարանի (անտիպ, Փարիզի ազգ. մտնդ.):

ՔԱԼԱՆԹԱՐ Ալեքսանդր Լևոնի (1919–1979), փիլ.: Փիլ. գիտ. թեկնածու (1958): Լևոն *Քալանթարի* որդին, Կարեն *Քալանթարի* եղբայրը: Աշխ-ները վերաբերում են գեղագիտ-յանը, գիտ. իմացության գեղագիտ. սկզբունքներին: Ք. հիմնավորել է գեղեցիկի «բնութենական ըմբռնման» ինքնատիպ տեսակետը:

ՔԱԼԱՆԹԱՐ Ալեքսանդր Հայրապետի (1855–1913), անասնաբույծ, խմբ., հաս. քաղ. գործիչ: Այսրկովկասում գիտ. անասնաբուծության հիմնադիրը: Ավետիս *Քալանթարի* եղբայրը, Լևոն *Քալանթարի* հայրը: Աշխ-ները վերաբերում են անասնապահության տարբեր ճյուղերի («Անասնապահության վիճակը Կովկասում», ռուս., 1893), ծխախոտագործության, շերամապահության հարցերին: 1893-ից՝ «Աշակի» խմբ.: Կովկասի հայկ. գղտ. ընկ-յան հիմնադիր-ղեկ., Կովկասի կայսեր. գղտ. ընկ-յան պատվ. անդամ:

ՔԱԼԱՆԹԱՐ (Լորիս-Քալանթար) Աշխարհիկ Աղալոյի (1884–1942), հայագետ, հնագետ, պատմաբան: Մասնակցել է Անիի պեղումներին և վիմագիր արձանագրությունների հավաքմանը. 1917-ին, ստիպված հեռանալով Անիից, փրկել է հնագիտ. հավաքածուների մի մասը (պահվում է ՀՊՊԹ-ում): Հեղինակ է «Երկու սեպագիր արձանագրություն Ռուսա Ա-ի, Սարդուրի որդու» (1927), «Հին Վաղարշապատի պեղումները» (1935) աշխ-ների, նաև «Հնագիտություն, մասն 1, նախապատմական հնագիտություն» (1923) ուս. ձեռնարկի:

ՔԱԼԱՆԹԱՐ Ավետիս Հայրապետի (1859–1937), կաթնատնտես-անասնաբույծ: Պրոֆ. (1930): ՀԽՍՀ աշխ. հերոս (1934): Ալեքսանդր *Քալանթարի* եղբայրը: Աշխ-ները վերաբերում են կաթի բաղադրության, խեչ-ների ցեղերի բարելավման, կաթնատնտ-յան կազմակերպման խնդիրներին:

Ք-ի անվամբ են կոչվել ՌԴ Կալուգայի մարզի Լիխվինյան գղտ. դպրոցը, Չուվաշիայի Վառնատյան գղտ. տեխնիկումը, Անասնաբույծների ընկ-յան Դոնի մի-ությունը, Ստեփանավանի անասնաբուծաանասնաբուժ. տնտ-յուն-տեխնիկումը:

ՔԱԼԱՆԹԱՐ Լևոն Ալեքսանդրի (1891–1959), թատեր. գործիչ, թատերագետ, ռեժ.: Պրոֆ. (1946): Ալեքսանդր Հ. *Քալանթարի* որդին, Ալեքսանդր և Կարեն *Քալանթարների* հայրը: ՀԽՍՀ ժող. արտիստ (1954): Հայ նորագույն պրոֆեսիոնալ ռեժիսուրայի սկզբնավորողներից, պրոֆեսիոնալ թատերագիտ-յան հիմնադիրը: 1921-ին հիմնադրել է (Ստեփան *Քափանակյանի* հետ) Թիֆլիսի «Որոնումների թատրոնը», 1931–36-ին՝ Երևանի բանվ. թատրոնի հիմնադիր-գլխ. ռեժ., 1937–43 և 1957–59-ին՝ ԵՌԹ գլխ. ռեժ., 1954–57-ին՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի ռեժ.: Բեմադրել է Հ. Իբսենի «Նորա» (1922), Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար» (1927), Մ. Գորկու «Հատակում» (1929), Վ. Շեքսպիրի «Օթելլո» ևն: Հեղինակ է «Արվեստի մայրուղիներում» (1963) աշխ-յան, նաև հոդվածների:

ՔԱԼԱՆԹԱՐ Կարեն Լևոնի (1928–2000), կինոգետ, լրագրող: Լևոն *Քալանթարի* որդին, Ալեքսանդր *Քալանթարի* եղբայրը, Մարգարիտ *Ռուխկյանի* ամուսինը: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1982): Հեղինակ է «Համո Բեկնազարյան» (1986), «Դերասանը հայկական կինոյում: Ֆիլմի հայեցակարգը և դերասանական կերպարը» (1982), «Ակնարկներ Փարաջանովի մասին» (1998), «Արվեստի աստվածությանը հավատարիմ» (Հենրիկ Մալյանի մասին, 2000, երեքն էլ՝ ռուս.) և այլ գրքերի:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ Արամ Աշոտի (1937–2010), հնագետ, պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1990): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006): 1993–2006-ին՝ Հնագիտ-յան և ազգագրության ինստ-ի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են Հայաստանի միջնադար. հնագիտ-յանը, մասնավորապես՝ Դվինի մշակույթին («Դվինի նյութական մշակույթը IV–VII դդ.», 1970):

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ Արտաշես Փիրաղայի (1931–1991), արձակագիր, դրամատուրգ, լրագրող, թարգմանիչ: 1970–82-ին՝ ՀԽՍՀ հեռուստառադիոպետկոմի դրամատիկ. հաղորդումների գլխ. խմբ.: Հեղինակ է «Խղճի գիշերային այցը» (1965), «Մի բուռ ծիծաղ» (1984) երգիծ. պատմվածքների, «Բացեք ձեր աչքերը» (1979), «Խոստովանություն» (1987) վիպակների ու պատմվածքների ժող-ների, «Քանի դեռ կամ» (բեմ.՝ 1980), «Շատ ժամանակակից սպանություն» (բեմ.՝ 1985) և այլ պիեսների, «Քննություն» (1989), «Իսկ դո՞ւք որտեղ էիք» (1990) վեպերի և այլ գործերի: ՀԳՄ Գ. Սունդուկյանի անվ. մրց. (1984):

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ Ելենա Վլադիմիրի (1890–1963), հելմինթոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (1951), պրոֆ. (1954): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1954): ԽՍՀՄ վաստ. բժիշկ (1955): ՀԽՍՀ-ում գիտ. հելմինթոլոգիայի հիմնադիրը: Ք. առաջինն է նկարագրել Trichostrongylus axei (1924), Skrijabini Kalantarian (1932) մակաբույծները և առաջարկել որդերի ձվիկների հետազոտման նոր՝ հետագայում իր անունով կոչված եղանակ:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ Ժենյա Անդրանիկի (ծ. 1942), գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1988), պրոֆ. (1990): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2016): Վազգեն *Գաբրիելյանի* կինը: Հեղինակ է «Գրական քննադատության տեսության և պատմության հարցեր» (1982), «Հայ գրականության պատմություն. V–XIX դարեր» (1986), «Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի և սաղմոսների առնչությունները» (1997), «Ե. Չարենց (ուսումնասիրություններ)» (2012) մենագրությունների, «Ուրվագծեր հայ գրականության» (2006) աշխ-յան:

ՀԳՄ «Հրանտ Մաթևոսյան» (2015) մրց., ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2011):

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ Պապա Բեջանի (1887–1942), ագրոքիմիկոս, մանրէաբան: Գղտ. գիտ. դ-ր (1911), պրոֆ. (1934): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1935): Եղել է Ագրոհողագիտ-յան ԳՀ կայանի տնօրեն: ԵՊՀ գղտ. ֆակ-ի առաջին դեկանը (1921–28), ՀԳԻ պրոռեկտոր (1930–37): Աշխ-ները վերաբերում են Հայաստանի հողերի ֆիզքիմ. հատկություններին, ագրոքիմ. և մանրէաբան. առանձնահատկություններին, Սևանա լճի ջրի միկրոֆլորային, բամբակենու փտախտի հարուցիչների հայտնաբերման, պալարաբակտերիանեքրի տարածվածության հարցերին:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ Պետրոս Հովհաննեսի (1735–մ. թ. անհտ), Ռուսաստանում բժշկ. կրթություն ստացած առաջին հայ բժիշկը: 1773-ից դասավանդել է Լազարյան ճեմարանում: 1789-ին գրել է «Բժշկարան համառոտ» (հրտ.՝ 1793, Նոր Նախիջևան) աշխ-ը, որի 20 գլուխներում (բժշկարան, լատ-հայ. բժշկ. տերմինների բառարան) շարադրված են հիվանդությունների ախտորոշման, բուժման, դեղորայքի օգտագործման, բուսաբուժության (հատկապես՝ հայկ. բնաշխարհի դեղաբույսերով) հարցերը:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ Ռուբինա Ռուբենի (ծ. 1925), երգչուհի (սոպրանո): ՀՀ վաստ. (1979), ՌԴ ժող. (1995) արտիստ: Հանդես է եկել մենահամերգներով («Ռուսական ռոմանսի երեկո», «Ես միևնույն կերպ սիրում եմ իմ Երևանը, իմ Լենինգրադը», «Հայաստանն իմ սերն է ու իմ ցավը», «Դասական ռոմանսի երեկոներ» ևն):

ՌԴ Պետ. մրց. (2000), ԽՍՀՄ «Բարեկամության», ՀԱԵ «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» (2005) շքանշաններ:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ Ստեփան Իսայու (1849–1924), վիրաբույժ: Բժշկագիտ. դ-ր (1881), Ս. Պետերբուրգի կայսեր. ռազմաբժշկ. ակադ-ի պրոֆ. (1885): Ռազմաբժշկ. ծառայության գեն. (1890): Ռուս-թուրք. պատերազմի (1877–78) ժամանակ ծառայել է Կովկաս. բանակում, եղել Ալեքսանդրապոլի զինվ. հոսպիտալի վիրաբուժ. բաժնի վարիչ, 1891–1924-ին՝ Ս. Պետերբուրգի կայսեր. ռազմաբժշկ. ակադ-ի ախտաբան-անատոմ: Ռուսաստանի Սբ Աննայի, Սբ Սվյատոսլավի 2-րդ և Սբ Վլադիմիրի 4-րդ աստիճանների շքանշաններ:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ Վարդգես Սարգսի (1933–1992), արձակագիր, հրտ., խմբ.: 1966–81-ին՝ *«Պիոներ կանչ»* թերթի խմբ., 1981–86-ին՝ «Հայգիրք» վարչության պետ, 1986–91-ին՝ *«Արևիկ»* հրտչ-յան հիմնադիր-տնօրեն: Հեղինակ է «Ականա ճանապարհորդներ» (1978), «Ծերպերի բնակիչները» (1983), «Նոր Ռոբինզոնները» (1984), «Կորած օրագիրը» (1986), «Հետաքննիչի վերջին գործը» (1987), «Վտանգավոր գործուղում» (1989) մանկապատանեկան վեպերի ու վիպակների (բոլորը՝ Մ. Բաղդասարյանի հետ):

ՔԱԼԱՉՅԱՆ Գառնիկ Մանուկի (1885–1921), բանաստեղծ, հաս. գործիչ: Հեղինակ է «Ներշնչումներ» (1908), «Բանաստեղծութիւններ» (1916) ժող-ների:

ՔԱԼԱՉՅԱՆ Լորիս Խաչատուրի (1922–2000), փիլ., շախմատիստ: Փիլ. գիտ. դ-ր (1969), պրոֆ. (1970): ԽՍՀՄ ս. վ. (1949), ՀԽՍՀ վաստ. մարզիչ (1967), ՀԽՍՀ ֆիզկուլտուրայի և ս. վ. գ. (1970): Աշխ-ները վերաբերում են իրավունքի և բարոյականության փոխհարաբերության օրինաչափություններին:

ՔԱԼԱՉՅԱՆ Սաշուր Հրայրի (ծ. 1936), ճարտ.: ՀՀ վաստ. ճարտ. (1987): Լյուդմիլա *Մկրտչյանի* ամուսինը: Համահեղինակ է Երևանում՝ Մեծ եղեռնի հուշահամալիրի

(1967), Հայոց ցեղասպանության ինստ-թանգարանի (1995), Գյումրիում՝ «Կումայրի» արգելոց-թանգարանի (1980), «Նարեկ» բնակելի շրջանի (1989) և «Կումայրիի» կենտր. հատվածի վերակառուցման (1991, 2004), ՀՄՊ-ում զոհված մարտիկների (1968, Տաթև), 1988-ի երկրաշարժի զոհերի (2005, Գյումրի, 1-ին մրց.) հիշատակին նվիրված հուշարձանների նախագծերի, Գյումրիի (1987, 2004), Շուշիի (1997) հեռանկար. զարգացման գլխ. հատակագծերի ևն:

Երիտասարդ ճարտ-ների համամիութ. ստուգատեսի դափնեկիր (1968), ՀՀ Պետ. մրց. (1985), Ֆ. Նանսեն հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2005):

ՔԱԼՈՅԱՆ Անժելա Հակոբի (ծ. 1958), գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (2006), պրոֆ. (2010): Հեղինակ է «Կինը 19-րդ դարավերջի հայ գրականության մեջ» (2005), «Կինը Րաֆֆու և Աղայանի ստեղծագործություններում» (2006) աշխ-ների:

ՔԱՂԱՔ, բնակավայր, որին տվյալ պետության օրենսդրությամբ տրվել է Ք-ի կարգավիճակ: Ք-ներին բնորոշ է բնակչության և կառուցապատման մեծ խտություն: Ք-ի առանձնացման առավել տարածված չափանիշը բնակչության թիվն է, որը տարբեր երկրներում կարող է զգալիորեն տարբերվել (օր.՝ Պերուում, Ուզբեկստանում Ք. է համարվում ավելի քան 100 հզ., Ճապոնիայում՝ ավելի քան 50 հզ. բնակիչ ունեցող բնակավայրը):

Ներկայում աշխարհի բնակչության շուրջ կեսն ապրում է Ք-ներում:

ՀՀ-ում կան 3 խոշոր և 48 փոքր Ք-ներ, որոնց բնակչության նվազն քանակը 5 հզ. և ավելի է:

«ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅԱԿԻՑ», հասքաղ. հանդես (1933–91, Երևան): Մինչև 1989-ը՝ ՀԿԿ ԿԿ պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի հրտ-յուն՝ տարբեր անվանումներով: Խմբ-ներ՝ Վ. Դաստակյան, Բալաբեկ Մարտիրոսյան, Զավեն Գրիգորյան, Սալոմե Արեշյան, Հակոբ Այվազյան, Ռոբերտ Խաչատրյան, Սուսաննա Քոչարյան, Կամո Վարդանյան, Խաչիկ Հովակիմյան և ուր.:

ՔԱՂԱՔԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ, ուրբանիզացում, հաս-յան զարգացման մեջ քաղաքների դերի բարձրացման գործընթաց: Ներառում է բնակչության սոցիալ-մասնագիտ. ու ժողովրդագր. կառուցվածքը, նրա ապրելակերպը, մշակույթի, արտադրող. ուժերի տեղաբաշխումը, տարաբնակեցումը: Ք-ման համար բնորոշ են գյուղ. բնակչության հոսքը քաղաքներ և գյուղերից ու մոտակա փոքր քաղաքներից բնակչության աճող ճոճանակ. շարժը դեպի խոշոր քաղաքներ (աշխ-ի, մշակութակենացաղ. կարիքների համար ևն):

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱԳԼՈՄԵՐԱՑԻԱ, իրար հետ արտադր., աշխ., կենցաղ-մշակութ. և ռեկրեացիոն կապերով կապված բնակավայրերի (հիմնականում՝ քաղաքների) տարած. համախումբ: Տարբերում են միակենտրոն (ունեն հստակ արտահայտված կենտր. քաղաք, որն ունի գերակա ազդեցություն շրջակա բնակավայրերի նկատմամբ) և բազմակենտրոն (երբ կան բնակչության թվով և տնտ. ներուժով իրար մոտ մի քանի կենտրոններ, կոչվում են նաև կոնուրբացիաներ) Ք. ա-ներ:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԾԻԾԵՌՆԱԿ (Delichon urbica), ճնճղուկանմանների կարգի *ծիծեռնակների* ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, տարածված: Մարմնի երկ.՝ 12,5, թևերի բացվածքը՝ 26–29 *սմ*, կ. զ.՝ 18 *գ*: Տարածված է առավելապես լեռն. շրջաններում և մարդու հարևանությամբ: Օգտակար է. ոչնչացնում է վնասակար միջատների (մոծակ, մլակ ևն):

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, քաղաքների հատակագծման և կառուցապատման տեսությունն ու իրազործումը: Ընդգրկում է հաս-տնտ., շին-տեխ., ճարտ., սան-հիգիենիկ. և այլ խնդիրներ: Հայկ. հնագույն Ք-ական կազմավորումներից են «համայնական տուն» բնակատեղիները (մ. թ. ա. V–IV հզ-ամյակ, Շենգավիթ, Շրեշ բլուր ևն), բրոնզիդար. բերդշենները (Նազրվան, Շամիրամ ևն): Մ. թ. ա. II հզ-ամյակի կես–I-ի սկզբին առաջացել են միջնաբերդերով, փողոցներով պարսպապատ քաղաքներ (Լճաշեն, Մոտկան բերդ ևն), հետագայում առավել ընդարձակվել են, կառուցվել ամրոցներ, դղյակներ, ապահովվել է ջրամատակարարումը: XX դ-ից Ք. զարգացել է նոր լուծումներով (գլխ. հատակագծեր, մոնումենտալ և տիպ. շենքեր, հրապարակներ ևն): Ժամանակակից Ք. առանձնանում է նոր շինանյութերի, հատկապես՝ ապակու լայն կիրառումով:

ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, գիտ-յուն. ուսումնասիրում է տնտ. հարաբերությունների հիմունքները: «Ք.» եզրույթը ներմուծել է Ա. *Մոնկրետրիենը* (1615): Որպես ինքնուրույն գիտ-յուն՝ ձևավորվել է կապիտալիզմի կազմավորման ժամանակաշրջանում և զարգացել դաս. դպրոցի ներկայացուցիչների (Ու. Պետտի, Ֆ. Քենե, Ա. Սմիթ, Դ. Ռիկարդո և ուր.) աշխ-ներում: XIX դ-ի կեսերին առաջացել է մարքսիստ. Ք.: XIX դ-ի 2-րդ կես–XX դ-ի սկզբին ձևավորվել են Ք-յան ավստր., քեմբրիջ., մաթ. ու այլ դպրոցներ: Ժամանակակից տնտեսագիտ. մտքի հիմն. ուղղություններն են քեյնսականությունը, նորդաս. ուղղությունը, ինստիտուցիոնալիզմը:

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ, պետ. իշխանության մարմինների ձևակերպված ամուսնություն՝ առանց եկեղեցու մասնակցության: Երբեմն Ք. ա. են անվանում փաստացի ամուսնությունը:

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, իրավունքի ճյուղ, որով կարգավորվում են գույք. և անձն. ոչ գույք. հարաբերությունները:

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐ, մարդու կյանքում տեղի ունեցող հիմն. իրադարձություններ (իրավաբ. փաստեր), որ ենթակա են պարտադիր գրանցման պետ. մարմիններում: Ք. կ. ա. են համարվում նաև այդ իրադարձությունների մասին գրանցումները: Պետ. գրանցման ենթակա Ք. կ. ա. են ծնունդը, ամուսնությունը, ամուսնալուծությունը, որդեգրումը, որոշված հայրությունը, անվանափոխությունը, մահը:

Ք. կ. ա-ի գրանցումների գրքերի և վկայականների ձևերը հաստատում է երկրի կառ-յուրը:

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, համապետ. պաշտպ. միջոցառումների համակարգ խաղաղ և պատերազմ. ժամանակաշրջանում՝ հակառակորդի հնարավոր հարձակման դեպքում բնակչության պաշտպ-յան և տնտ-յան անխափան աշխ-ն ապահովելու նպատակով:

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ԱՄՆՈՒՄ 1861–65, հս. և հվ. նահց-ների միջև: Հվ. նահց-ները խոովություն են բարձրացրել (1861-ի ապրիլ) ստրկությունը պահպանելու և ողջ երկրով տարածելու նպատակով: 1-ին փուլում (1861–62) Հյուսիսի վարած պատերազմն անվճռական էր՝ «սահմանադրական», որի հետևանքով կրել են մի շարք պարտություններ: 2-րդ փուլը վճռական էր. 1864–65-ին ջախջախել են Հարավի հիմն. ուժերին և 1865-ին գրավել ստրկատիր. նահց-ների մայրաքաղաք Ռիչմոնդը: Ստրկությունը պաշտոնապես վերացվել է 1863-ի հունվ. 1-ին:

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ 1917–22, ռազմ. հակամարտությունների շղթա՝ տարբեր քաղ., սոցիալ., և էթնիկ. խմբերի միջև: Հոկտ. հեղ-յան (1917) հաղթանակից և Ա.Հ.Պ-ից Ռուսաստանի դուրս գալուց հետո գերմ. և ավստրո-հունգ. զորքերը 1918-ի փետր-մայիսին զավթել են Ուկրաինայի, Բելոռուսիայի, Մերձբալթիկայի մի մասը և Ռուսաստանի հվ-ը, որը հանգեցրել է *Բրեստի հաշտության* (1918) կնքմանը: 1918-ի մարտին անգլ., ֆրանս., ամերիկ. զորքերը գրավել են Մուրմանսկը, ապրիլին ճապոն. զորքերը՝ Վլադիվոստոկը, մայիսին սկսվել է *Չեխոսլովակյան կորպուսի խռովությունը*: 1918-ի ամռանը երկրի տարածքի ¾-ում կազմավորվել են խորհրդ. իշխանության դեմ պայքարող բազմաթիվ խմբավորումներ և կառ-յուններ: Խորհրդ. կառ-յունն ստեղծել է *Կարմիր բանակ* և իրագործել «ռազմական կոմունիզմի» քաղ-յուն: 1919-ի ապրիլ–օգոստ-ին Կարմիր բանակը հետ է մղել սպիտակգվարդ. ուժերի հարձակումն Արևելքում (ծովակալ Ա. Վ. *Կոլչակ*), Հվ-ում (գեն. Ա. Ի. *Դենիկին*), Արմ-ում (գեն. Ն. Ն. *Յուդենիչ*): Ընդհանուր հակահարձակման հետևանքով՝ Անտանտի պետությունները հետ են կանչել իրենց զորքերը և վերացրել խորհրդ. երկրի շրջափակումը: 1921–22-ին ճնշվել են հակաբոլշևիկ. խռովությունները Կրոնշտադտում, Տամբովում, Ուկրաինայի մի շարք շրջաններում և այլուր, վերացվել են ինտերվենտների և սպիտակգվարդիականների օջախները Միջին Ասիայում և Հեռավոր Արևելքում (1922-ի հոկտ.):

Քաղաքաց. պատերազմի հետևանքով սովից, հիվանդություններից, ահաբեկչությունից և մարտերում զոհվել է 8–13 մլն մարդ, այդ թվում՝ մոտ 1 մլն Կարմիր բանակի զինվորներ: Պատերազմի ավարտին տարագրվել է մինչև 2 մլն մարդ: Տնտ. վնասը կազմել է շուրջ 50 մլրդ ռուբլի՝ ոսկով:

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, համակարգված քաղաքաց. իրավունքի նորմեր պարունակող օրենք: ՀՀ Ք. օ. ընդունվել է 1998-ի մայիսի 5-ին, ուժի մեջ է մտել 1999-ի հունվ. 1-ից:

ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀՀ Սահմանադրությամբ և այլ օրենքներով հռչակված ու երաշխավորված իրավունքների, ազատությունների և պարտականությունների ամբողջությունը, որ սահմանված է ՀՀ բոլոր քաղաքացիների համար անխտիր:

ՔԱՂԱՔԱՅԻՈՒԹՅՈՒՆ, պետության և անձի միջև կայուն իրավ. կապը, որի ուժով պետությունը և անհատը ձեռք են բերում փոխադարձ իրավունքներ ու պարտականություններ: «ՀՀ Քաղաքա-

ցիության մասին» օրենքով (1995) ՀՀ բոլոր քաղաքացիները հավասար են օրենքի առաջ՝ անկախ ՀՀ Ք. ձեռք բերելու հիմքերից, ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղ. կամ այլ հայացքներից, սոցիալ. ծագումից, գույք. կամ այլ դրությունից, ունեն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատություններն ու պարտականությունները: ՀՀ-ում 2007-ից թույլատրվում է երկքաղաքացիությունը:

ՔԱՂԴԵԱՅԻՆԵՐ, սեմ. անասնապահ ցեղեր, որոնք մ. թ. ա. I հզ–ամյակի 1-ին կեսին տարաբնակվել են Բաբելոնիայի ծայրագավառներում: Քաղդեական գրավոր հուշարձաններ չկան. Աստվածաշնչում քաղդեերեն անվանել են բաբելա-արամեական խոսվածքը: Դաշնակցելով Էլամի հետ՝ մ. թ. ա. IX դ–ից պայքարել են Ասորեստանի դեմ: Մ. թ. ա. 626–538-ին Բաբելոնում կառավարել է քաղդեական հարստությունը (Նաբոպալասար, Նաբուգոդոնոսոր II և ուր.), ստեղծել Նոր Բաբելոնյան հզոր թագավորությունը:

ՔԱՂԻՊԴ, **Նիմֆիոս** (այժմ՝ Բաթման), գետ Հայկ. լ–աշխարհում, Արմ. Տիգրիսի ձախ վտակը: Երկ.՝ մոտ 140 *կմ*: Սկիզբ է առնում Սիմսար լ–ներից, հոսում անդնդախոր ձորով: Վտակներն են Ասպական (այժմ՝ Շատախ) և Սասուն գետերը: Մնումը ձնաանձրևային է:

ՔԱՂԿԵԴՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, դավանաբան. ուսմունք. ընդունվել է 451-ին Մարկիանոս կայսեր նախաձեռնությամբ գումարված Քաղկեդոնի ժողովում: Ըստ այդ ժողովի որոշումների՝ *Հիսուս Քրիստոսի* մեջ մարդկային և աստված. բնությունները միավորված են անխառն ու անշփոթ կերպով և մեկ աստվածամարդկային բնություն չեն: ՀԱԵ մերժում է Ք.:

ՔԱՂԿԵԴՈՆԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ 451, չորրորդ տիեզերական ժողով, տեղի է ունեցել Կ. Պոլսի Քաղկեդոն արվարձանում՝ Բյուզանդիայի կայսր Մարկիանոսի (450–457) և Հռոմի պապ Լևոն I-ի նախաձեռնությամբ: Ք. տ. բանադրել է միաբնակություն (տես *Միաբնակներ*) ընդունած Եփեսոսի 449-ի տիեզ. ժողովը և ճանաչել Հիսուս Քրիստոսի երկու բնույթի մասին դավանաբան. ուսմունքը (տես *Երկաբնակներ*): Առաջնության համար պայքարում Ք. տ. ձգտել է Արևելքին ուժով պարտադրել նոր վարդապետությունը. արմ. եկեղեցին (Կոստանդնուպոլիս և Հռոմ) հաղթանակ է տարել արլ–ի (Հայաստան, Ասորիք, Եգիպտոս) նկատմամբ: Ք. տ–ով տրոհվել է համաշխ. եկեղեցին, որը, որոշ ուսումնասիրողների կարծիքով, բացասաբար է ազդել Արևելքում քրիստոնեության հաստատման վրա և նպաստել է մահմեդականության տարածմանը: ՀԱԵ չի մասնակցել Ք. տ–ին և չի ճանաչել նրա կանոնները:

ՔԱՂՈՅ, հայկ. հեթանոս տոմարի 5–րդ ամիսը: Ք–ի 1–ը համապատասխանում է դեկտ. 9–ին:

ՔԱՂՑԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, ճարպակալման և մի շարք այլ հիվանդությունների բուժման մեթոդ՝ սննդի ընդունման ժամանակավոր սահմանափակմամբ կամ լրիվ ընդհատմամբ: Կիրառվում է բեռնաթափման օրերի, սահմանափակող բուժ. սննդի և լրիվ քաղցածության ձևերով (միայն հիվանդանոց. պայմաններում և բուժանձնակազմի հսկողության տակ):

ՔԱՂՑԱԾՅԱՆ, **Գոլոդով**, Անդրեաս (1809–1856), կոմպոզիտոր: 1852-ից՝ Սևծով. նավատորմի փող. նվագախմբի կապելմայստեր: Հեղինակ է «Սինոպյան քայլերգ»-ի, «Չու հաճույս Խարասու–բազարի» քայլերգի (դաշնամուր. փոխադրությունները տպագրվել են «Բազմավեպում», 1881, № 1), թատեր. երաժշտության են: Քրիստափոր Կարա–Մուրզան իր համերգներում ընդգրկել է նաև Ք–ի երգերից («Չու հաղթանակի», «Պատերազմի նեղ օրերուն», «Առավոտյան երգ», «Ձարթիր, սիրտ իմ», «Պանծասցին փառոք» ևն):

ՔԱՂՑԱԾՈՒԹՅՈՒՆ, օրգանիզմի վիճակ. առաջանում է սննդի կամ նրա առանձին բաղադրամասերի բացակայության կամ անբավարարության, նաև դրանց յուրացման խանգարումների ժամանակ: Որպես ընականոն երևույթ՝ նկատվում է մի շարք կենդանիների (երկկենցաղներ, միջատներ, ձկներ, սողուններ) քնափության կամ ցրտից ընդարմացման շրջանում: Սննդամթերքի բացակայության պատճառով հաս–յան լայն շերտերի Ք. սոցիալ. աղետ է:

ՔԱՂՑԿԵՂ, չարորակ ուռուցք, առաջանում է մաշկի, ստամոքսի, աղիների, շնչառ. ուղիների, տարբեր գեղձերի էպիթել. հյուսվածքից ևն: Կախված ձևաբան. առանձնահատկություններից՝ տարբերում են Ք–ի տարբեր ձևեր. տափակ բջջ. Ք. առաջանում է առավելապես մաշկի և տափակ էպիթելով ծածկված լորձաթաղանթների վրա (ադենոկարցինոմա, սկիռո) ևն: Տես նաև *Ուռուցքածնություն*:

ՔԱՂՑԿԵՂ ԲՈՒՅՍԵՐԻ, մշակովի և վայրագ բույսերի հիվանդություն. դրսևորվում է բույսերի ցողունների, ճյուղերի, արմատների, հազվադեպ նաև այլ օրգանների անկանոն տարածումով, ինչը հանգեցնում է մակաձևերի և ուռուցքների առաջացման: Հարուցիչները հիմնականում սնկերն ու բակտերիաներն են:

ՔԱՂՑԿԵՂԱԾԻՆ ՆՅՈՒԹԵՐ, քիմ. նյութեր, որոնց ներգործությամբ օրգանիզմներում որոշակի պայմաններում առաջանում է *քաղցկեղ* և այլ ուռուցքներ: Քաղցկեղածին են բազմացիկլիկ ածխաջրածինները, ազոներկերը, արոմատիկ ամինները, նիտրոզամինները ևն: Քաղցկեղածին հատկություններ ունեն նաև մի շարք արտածին նյութեր (ստերոիդային հորմոններ, տրիպտոֆանի մետաբոլիտներ ևն)՝ նրանց ավելցուկ. կուտակման կամ որակ. փոփոխությունների դեպքում:

ՔԱՄ, ըստ Աստվածաշնչի՝ Նոյի կրտսեր որդին: Հոր մերկությունը ծաղրելու համար Նոյը Ք–ին և նրա սերնդին անեծքով հավետ դատապարտել է ծառայական խավի: Ք–ի որդիներ Քուշը, Մեստրիմը, Փութը և Քանանը համարվել են քամյան ժողդ–ների (արաբներ, եթովպացիներ, եգիպտացիներ ևն) նախահայրերը:

ՔԱՄԱԼՅԱՆ Աստղիկ Արշակի (1926–1991), երգչուհի: ՀԽՍՀ ժող. արտիստ (1978): 1944–79-ին՝ Հայկ. ժող. երգի–պարի անսամբլի մենակատար, 1963–68-ին, միաժամանակ՝ Երևանի պիոներների պալատի երգի–պարի անսամբլի գեղ. ղեկ.: Կատարումներն առանձնացել են քնարականությամբ, հուզականությամբ:

ՔԱՄԱԼՅԱՆ Արտակ Քաջիկի (ծ. 1970), տնտեսագետ: Տնտ. դ–ր (2000), պրոֆ. (2001): Աշխ–ները վերաբերում են գոտյան մեջ ռիսկերի կառավարման, հարկային պլանավորման ու կանխատեսման խնդիրներին:

ՔԱՄԱԼՅԱՆ Գուրգեն Ոսկանի (1909–1973), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դ–ր (1953), պրոֆ. (1954): Աշխ–ները վերաբերում են նյութափոխանակության կարգավորման, գղտ. կենդանիների մթերատվության բարձրացման հարցերին: Առաջարկել է ամման կենսածին խթանիչ՝ կոլամինը:

ՔԱՄԱԼՅԱՆ Լիա Արշավիրի (1929–2005), վիրուսաբան, իմունաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1968), պրոֆ. (1972): Զբաղվել է չարորակ նորագոյացություններով հիվանդների իմունաառեակտիվության հետազոտմամբ և հայտնաբերված իմուն. անբավարարության շտկման բնական ու սինթետիկ հակավիրուս. նյութերի և ինետերֆերոնի մակածիչների հայտնաբերման, վիրուսազուգորդված ուռուցքների կանխարգելման ու բուժման մեթոդների մշակմամբ:

ՔԱՄԱԼՅԱՆ Մկրտիչ Հայրապետի (1915–1971), նկարիչ: ՀԽՍՀ վաստ. նկարիչ (1965): Հեղինակ է ընդհանրացված և դեկորատիվ («Ինքնանկար», 1946, «Վաստակավոր արտիստուհի Մ. Ձմշկյան», 1952, «Աշխատանք և սեր», 1962, ևն), մոնումենտալ–դեկորատիվ («Հայաստանի բարիքները», պաննո, 1970, Մոսկվայի «Արմենիա» կինոթատրոնի ճեմասրահում) գործերի:

ՔԱՄԱԼՅԱՆ Ռոմիկ Գուրգենի (ծ. 1937), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դ–ր (1986), պրոֆ. (1990): *Գուրգեն Քամալյանի* որդին: Առաջարկել է էթանոլամինի N–ացետիլ– և O–սուլֆոածանցյալների կիրառումը՝ որպես գղտ. թռչունների ածի, ձվատվության խթանման միջոց: Պարզաբանել է էթանոլամինի սրտաակտիվ հատկությունների նյարդահորմոն. մեխանիզմները, ցույց տվել էթանոլամինի ացիլման հնարավորությունը՝ երկամուղների ացիլազ–I խմորիչով և բացահայտել նրա թաղանթակայունացնող ու հակաթունային հատկությունները:

ՔԱՄԱԼՅԱՆ Սարգիս Ավետիքի (1860–1934), բանահավաք, գրող, թարգմանիչ, մանկավարժ: Մշակել է հեքիաթներ, առակներ («Հէքիաթներ», 1892, «Ծովինար», 1893, «Ազգային առակներ», 1907, ևն), վերապատմել նշանավոր գր. երկեր («Սասունցի Ցովսան», 1900, «Սիրելի հերոս», 1905), թարգմանել ու փոխադրել գերմ–ից, ռուս–ից, ֆրանս–ից: Հեղինակ է «Խուլ Խաչիկ» (1894), «Աստուած չճանաչողը» (1895), «Վարդանանց եւ Ղեւոնդեանց մասին» (1910) և այլ պատմվածքների, գրույցների:

ՔԱՄԱԼՅԱՆ Օլեգ Արմանի (ծ. 1951), քիմիկոս: Քիմ. գիտ. դ–ր (2009), պրոֆ. (2011): Եղել է ԼՂՀ Գնահատման և թեստավորման հիմնադիր–տնօրեն (2006–07): Աշխ–ները վերաբերում են ադսորբենտների մակերևույթի քիմիային, մագնիսաքիմիային, քրոմատագրությանը, քիմիայի դասավանդման մեթոդիկային: ԼՂՀ «Մարտական ծառայության» (2006), վարչապետի «ԼՂՀ–ին մատուցած ծառայությունների և ներդրած ավանդի համար» (2011), ԵՊՀ արծաթե (2011) մեդալներ, ԼՂՀ Ի. Հ. Աթայանի անվ. հուշամեդալ (2006):

ՔԱՄԱՆ, **քամանի**, ժող. լար. աղեղնավոր երաժշտ. գործիք: Նվագում են ծնկի վրա՝ ուղղաձիգ դիրքում: Կիրառվում է աշուղ. արվ–ում, անսամբլներում: Տարածված է նաև Մերձ. Արևելքում և այլուր:

ՔԱՄԱՆՉԱ, ժող. լար. աղեղնավոր երաժշտ. գործիք: Իրանը գնդաձև է՝ ծածկված թաղանթ. մեմբրանով: Նվագում են ծնկի վրա՝ ուղղաձիգ դիրքում:

Տարածված է Այսրկովկասում, Իրանում, Թուրքիայում և այլուր:

Այսրկովկասում օգտագործվող Ք. XX դ–ից քառալար է (մետաղե), 4–րդ լարը և լարվածքը (1–2–րդ) հաստատել է Սաշա *Օգանեզաշվիլին*: 1920–ական թթ–ի վերջերին Վ. Բունին ստեղծել է կվինտ. լարվածքով Ք–ների ընտանիք (պրիմա, ալտ, բաս, կոնտրաբաս): Մենանվագ և անսամբլ. գործիք է:

ՔԱՄԵԼԵՈՆ (լատ.՝ Chamaeleon), երկնքի Հվ. կիսագնդի բևեռամերձ համաստեղություն՝ Ճանճ, Ողնուց, Թռչող Թուկ, Սեղանասար, Օկտանտ, Դրախտ. Թռչուն համաստեղությունների միջև: Պայծառ աստղեր չունի: ՀՀ տարածքից չի երևում:

ՔԱՄԵԼԵՈՆՆԵՐ (Chamaeleontidae), մողեսների ենթակարգի սողունների ընտանիք: Երկ.՝ մինչև 60 *սմ*: Մարմնի գունավորումն ու նախշերը կարող են խիստ փոփոխվել՝ կախված լուսավորությունից, ջերմաստիճանից ևն: Հայտնի է մոտ 90 տեսակ: Ապրում են առավելապես անտառներում, սնվում միջատներով, որոնց բռնում են երկար լեզվով: Փխբ. իմաստով՝ Ք. են անվանում անսկզբունք, իրադրությունից կախված իր հայացքները հեշտությամբ փոխող մարդուն:

ՔԱՄԻ, օդի հորիզոն. շարժումը Երկրի մակերևույթին՝ պայմանավորված մթն. ճնշման անհավասարաչափությամբ. ուղղված է բարձր ճնշման վայրից դեպի ցածր ճնշման վայր: Ք. բնութագրվում է արագությամբ (*մ/վ* կամ *կմ/ժ*), ուղղությամբ և ուժգնությամբ: Կոչվում է հորիզոնի այն կողմով, որտեղից փչում է: Առաջացնում է ընդարձակ օդ. հոսանքներ՝ ***մուսոններ, պասատներ***, որոնցով պայմանավորված է մթն–ի ընդհ. շրջանառությունը:

ՀՀ տարածքին բնորոշ է Ք–ու փոփոխ. ռեժիմը: Տարվա ընթացքում հիմնականում տիրապետում են արմ. օդ. հոսանքները: Սակայն լեռն. ռելիեֆի պայմաններում, հատկապես՝ ցածրադիր վայրերում, օդ. հոսանքները շեղվում են իրենց նախն. ուղղությունից՝ առաջացնելով Ք–ների տարբեր ուղղություններ: Միայն 2500–3000 *մ*–ից բարձր լեռներում շուրջ տարին պահպանվում է օդ. հոսանքների արմ. ուղղությունը:

ՔԱՄԻԼ ՄՈՒՍՏԱՖԱ (1874–1908), Եգիպտոսի ազգ. ազատագր. շարժման գործիչ, լրագրող, հրապարակախոս: 1907–ին հիմնադրել է «Վաթան» կուս–ը ու գլխավորել այն, ակտիվացրել հակաանգլ. քարոզչությունը: Մեծ ավանդ ունի ժամանակակից գր. արաբ–ի զարգացման գործում:

ՔԱՄԻՆԳՍ (Cummings) Էդվարդ Էսթլին (1894–1962), ամերիկացի բանաստեղծ: Հեղինակ է ուրբանիստ–քնար. և ֆուտուրիստ. բանաստեղծությունների. «100 ընտիր բանաստեղծություններ» (1959) ժող–ի, «Վիթխարի բանտախուց» (1922) վեպի, «Նրան» (1927) դրամայի, «Ես կամ» (1933) ակնարկների ժող–ի, որտեղ քննադատել է ԽՍՀՄ–ը, նաև գեղանկարչ. աշխ–ների: Հայ. հրատարակվել է «42 բանաստեղծություն» (2014) ժող–ը:

ՔԱՄՅՈՒ, Կամյու (Camus), Ալբեր (1913–1960), ֆրանսիացի գրող, փիլ., էկզիստենցիալիստ: Հեղինակ է «Օտարը» (1942, հայ.՝ 1994) վիպակի, որտեղ ***«գիտակցության հոսք»***–ի միջոցով բացահայտել է հերոսի ներքին հոգևոր դատարկությունը, «Ժանտախտը» (1947, հայ.՝ 1991) վեպի, «Սիզիփոսի առասպելը» (1942, հայ.՝ 1995), «Խոռվարար մարդը» (1951) փիլ. էսսեների, «Կալիգուլա» (1944) դրամայի, «Անկում» (1956, հայ.՝ 1971) վիպակի, «Հրատապ գրառումներ» (գիրք 1–3, 1950–1958) հրապարակախոս. նյութերի ժող–ի և այլ գործերի: Հայ. հրատարակվել են նաև «Առաջին մարդը» (1997) վեպը, «Երկեր» (2002) ժող–ը: Նորելյան մրց. (1957):

ՔԱՅԼԵՐԳ, երաժշտ. ժանր: Առանձնանում է խիստ համաչափ տեմպով, հստակ ռիթմով: Ապահովում է մեծ թվով մարդկանց միաժամանակյա շարժումը (զորքերի շարժումը շարքերով, բազմազան երթեր): Երաժշտ. չափը՝ 2/4, 4/4 կամ 6/8: Ձինվ. Ք. ստեղծվում է փող. նվագախմբի համար: Տարբերում են նաև թաղման կամ սգո Ք–երը: Օգտագործվում է օպերայում, բալետում, սիմֆոնիայում, սյուիտում:

ՔԱՆ (Kahn) Գյուստավ (1859–1936), ֆրանսիագիր հրեա գրող, արվեստաբան: «Լը սիմվոլիստ» (ֆրանս.) հանդեսի հիմնադիր (1886, Ժ. Մորեասի և Պ. Ադանի հետ): Հեղինակ է «Առաջին պոեմները» (1897) ժող–ի, «Խելագար արքան» (1896), «Կրքի ծաղիկները» (1900), «Ռոդեն» (1906), «Ֆրագոնար» (1907), «Շառլ Բոդլեր» (1928) և այլ գործերի, Է. Շահինի մասին աշխ–յան, Ա. Բաբայան–Քարբոնելի, Շ. Ադամյանի և ուրիշ հայ նկարիչների մասին հոդվածների, Հ. Գյուրջյանի, Մ. Քեպապճյանի ցուցահանդեսների կատալոգների առաջաբանների:

ՔԱՆԱԿԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՈՐԱԿԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑՄԱՆ ՕՐԵՆՔ, դիալեկտիկայի հիմն. օրենքներից, որը նկարագրում է շարժման ու զարգացման ընթացքը: Զարգացման այս համընդհանուր օրենքն արձանագրում է, որ յուրաքանչյուր կոնկրետ գործընթացի աննշան, աստիճան. քանակ. փոփոխությունների կուտակումը անհրաժեշտաբար հանգեցնում է էական, արմատ., որակ. փոփոխությունների՝ հին որակից նոր որակի անցմանը: Այս օրենքը գործում է բնության, հաս–յան և մտածողության զարգացման բոլոր ոլորտներում:

ՔԱՆԱՆ, Պաղեստինի, Ասորիքի և Փյունիկիայի տարածքի հնագույն, մինչիսրայել. անվանումը: Ենթադրում են, որ նշանակում է ծիրանի և սկզբնապես վերաբերել է Փյունիկիային, որտեղ արդյունահանվել է ծիրանի ներկ: Մ. թ. ա. XVI–XV դդ–ում եղել է Եգիպտոսի քաղ. ու տնտ. ազդեցության տակ, XIII դ–ում բաժանվել է Եգիպտոսի և Խեթ. պետության միջև: Այդ նույն ժամանակ իսրայել. ցեղերն սկսել են Ք–ի նվաճումը: Հետագայում անվանումն օգտագործվել է Փյունիկիայի վերաբերյալ:

ՔԱՆԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, Միջերկր. ծովի և Միջագետքի միջև ընկած շրջանում մ. թ. ա. III–II հզ–ամյակում բնակված սեմիտների լեզուները: Որոշ գիտնականների կարծիքով՝ Ք. լ–ին են պատկանում հին արմ. քանան–ը, ուգարիտ–ը, ամորեերենը և սրանցից ծագած իվրիտը (հին հրեերեն), փյուն–ն ու մոաբիտ–ը (մովաբերենը): Արամեերենի հետ Ք. լ. կազմում են սեմ. լեզուների հս–արմ. ենթախումբը: Ք. լ–ից կենդանի է միայն ***իվրիտը***:

ՔԱՆԱՆՆԵՐԵՆ, քանանների լեզուն: Պատկանում է ***քանանական լեզուներին***: Գրավոր հնագույն հուշարձաններն ավանդված են մ. թ. ա. XV–XIV դդ–ից:

ՔԱՆԱՆՅԱՆ Գևորգ Եղիայի (1836–1897), պատմաբան, մանկավարժ, հաս. գործիչ: 1861–91–ին՝ Լազարյան ճեմարանի տեսուչ, «Գամառ–Քաթիպա» գր. ընկյան հիմնադիրներից (1854): Հեղինակ է արևմտահայության կյանքին, քաղ. իրավիճակին վերաբերող հոդվածների [զետեղվել են «Եղբայրական օգնություն Թուրքիայի տառապյալ հայերին» (ռուս., հ. 1–2, 1897–98) ժող–ում]: Ք–ի կտակի համաձայն՝ 1901–ին Նոր Ջուղայում հիմնադրվել է «Գևորգ Քանանյան» մանկապարտեզը, 1905–ին՝ համանուն երկսեռ դպրոցը (գործում է ցայսօր):

ՔԱՆԱՔԵՌԻ ՋՐԱԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ Հովսեփ Տեր–Աստվածատրյանի անվան, Սևան–Հրազդան կասկադի՝ առաջին հերթին գործարկված 5–րդ հիդրոհանգույցը: Կառուցվել է 1930–36–ին Հրազդան գետի միջին հոսանքի՝ Արզնիի և Քանաքեռի միջև ընկած հատվածում: Ունի 102 *ՄՎտ* ընդհ. հզորության 6 հիդրոագրեգատ: Դիմացի սարալանջին տեղակայված է 35/110 *կՎ* լարման բարձրացման ենթակայանը: Ք. ջ–ի ջրատարից են սնվում Նոր Արաբկիրի, Նոր Դալմայի ոռոգիչ ջրանցքները, նաև Կոտայքի ոռոգման ջրհան կայանը:

ՔԱՆԱՔԵՌԻ ՋՐՀԱՆ ԿԱՅԱՆ, շահագործման է հանձնվել 1949–ին՝ ՀՀ Կոտայքի մարզի անտառտնտ–յունը, Առինջի տնտ–յունը և Երևանի բուսաբ. այգին ոռոգման ջրով ապահովելու նպատակով: Մսվում է Քանաքեռի ջրէկի ջրանցքից: Տեղադրված են 3 ջրհան պոմպեր, մղման բարձր.՝ 100 *մ*, ջրի ելքը՝ 1,15 *մ³/վ*:

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ (լատ.՝ Sculptor), երկնքի Հվ. կիսագնդի համաստեղություն (պայծառ աստղեր չի պարունակում)՝ Կետ, Ձրիես, Հվ. Ձուկ, Կոտնկ, Փյունիկ, Վառարան համաստեղությունների միջև: ՀՀ տարածքից երևում է աշնանը և ձմռանը:

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ***կերպարվեստի*** տեսակ. պատկերումներն իրագործում է ծավալ. եռաչափ մարմնավորումներով: Ք–յան ենթատեսակներն են բոլորաքանդակը (մշակվում և դիտվում է բոլոր կողմերից) և ռելիեֆը (պատկերը հարթության վրա փորագրվում է կամ կերտվում որոշակի ցցունությամբ, դիտելի է դիմացից, մասամբ՝ կողքերից): Ռելիեֆները, ըստ ծավալ. պատկերաձևերի, լինում են **բարձրաքանդակ** (պատկերի ծավալի կեսից ավելին դուրս է մակերեսից), **հարթաքանդակ** (պատկերի ծավալի կեսից պակասը դուրս է մակերեսից) և **խորաքանդակ** (մակերեսից խոր ընկած քանդակապատկեր): Տարբերում են **մոնումենտալ** (գործեր որոշակի ճարտ. միջավայրի համար կամ առանձին հուշարձաններ և կոթողներ), **հաստացային** (մարդու իրական չափերին մոտ գործեր. դրվում են թանգարաններում, հաս. և բնակելի շենքերում), **դեկորատիվ** (զարդարման միջոց, սովորաբար համադրվում է ճարտ–յան հետ) և «փոքր ձևերի» (տարբեր ժանրերի մանրաքանդակներ) քանդակներ: Հայկ. հնագույն քանդակները (ժայռապատկերները) վերաբերում են նեոլիթին:

ՔԱՆԴԱԿԱԶԱՐԴՈՒՄ, *դեկորատիվ-կիրառական արվեստի* հնագույն և առավել տարածված տեսակներից. տաշելու, կոփելու, վերադրելու, փորագրության, դրվագման, ծեփման և այլ տեխնիկայով փայտից, քարից, ոսկրից, կավից, մետաղներից և այլ նյութերից զարդաքանդակներ ստեղծելու արվ–ը: Կիրառվում է կենցաղ. առարկաներ զարդարելու, կառույցները,

կոթողները, տապանաքարերը, խաչքարերը, նաև մատյանների կազմերը, գրականները ևն հարդարելու համար: Ք–ման ինքնուրույն ոլորտ է ***գլիպտիկան***:

ՔԱՆԹԱՐԻՄ Մելիտոն Վաղլամի (1920–1993), կրտսեր սերժանտ: ԽՄ հերոս (1945): Ազգությամբ՝ մեգրել: Հերոսի կոչման է արժանացել ԵՀՊ-ի ավարտին հաղթական դրոշը սերժանտ Մ. Ա. Եգորովի հետ Ռայխստագի վրա բարձրացնելու համար (1945-ի մայիսի 9-ին ժամը 03:00-ին):

ՔԱՆԹԱՐՋԱՆ Ժիրայր Գրիգորի (ծ. 1931), ջութակահար: 1964-ից՝ ԱՄՆ-ում, ջութակի դասեր է առել Իվան ***Գալամյանից***: Երկացանկում՝ Յ. Ս. Բախի, Ն. Պագանինիի, Հ. Վենյավսկու, Կ. Խաչատրյանի երկերից: Եղել է Տորոնտոյի (Կանադա) սիմֆ. նվագախմբի կոնցերտմայստեր, 1973–76-ին՝ «Արարատ» եռյակի կազմում: Հիմնադրել է նաև լար. քառյակ:

ՔԱՆԻՆԳՀԵՄ (Cunningham) Ուոլտեր (ծ.1932), ԱՄՆ 3-րդ աստղագնացը: «Ապոլոն 7» տիեզերանավով (1968-ի հոկտ.) թռիչքի ժամանակ եղել է Լուսնային մոդուլի օդաչու: Թռիչքի տևողությունը՝ 10 օր 20 *ժ* 9 *ր* 3 *վ*:

ՔԱՆՈՆ, ժող. լար. կսմթթ. երաժշտ. գործիք: Սեղանաձև իրանը փայտե ծածկով է, ուղղանկյուն մասում երեսպատված է կենդ. ծագման թաղանթով: Ունի 24 եռակի լարեր (լարվածքը՝ դիատոնիկ): Նվագում են ձախ ոտքին դրված՝ ձեռքերի մեծ, միջին և ցուցամատներով (մատներին սեղմված կնտնտոցներով): Մենանվագ և անսամբլ. գործիք է:

ՔԱՆԴԱՆՅԱՆ Աղասի Գարեգինի (1904 – 1999), քիմիկոս-վերլուծաբան: Քիմ. գիտ. թեկնածու (1939), դոցենտ (1941): Ուսումնասիրել է ՀՀ բնական սորբենտներն ու դրանք կիրառել անօրգ. իոնները նրբաշերտ քրոմատագրության եղանակով բաժանելու և որոշելու համար: Մշակել է նստեցուցիչ-կոմպլեքսանտի բարենպաստ կոնցենտրացիայի որոշման քրոմատագրության եղանակ:

ՔԱՆԴԱՆՅԱՆ Արամազդ Պարգևի (ծ. 1959), ստոմատոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (1996), պրոֆ. (1997): 2002-ից՝ «Լազեր դենտ» (Երևան) ստոմատոլոգ. կլինիկայի հիմնադիր-տնօրեն: ՀՀ-ում առաջինն է կիրառել (2004) ատամի կարծր և հարատամնային հյուսվածքների բորբոք. հիվանդությունների, բերանի խոռոչի լորձաթաղանթի, ատամների արմատների բշտուռուցքների լազեր. բուժումը: Համահեղինակ է «Հյուսվածաբանական տերմինների բառարանի» (2000):

ՔԱՇԱԹԱՂ, լ-գագաթ Արեգունու և Սևանի լ-շղթաների հանգուցակետում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի արլ. սահմանագլխին: Բարձր.՝ 2901 մ: Կազմված է կավճի հրաբխ. ապարներից: Ժայռոտ ու քարքարոտ է, լանդշաֆտը՝ լ-մարզագետնային:

ՔԱՇԱԼԱԹԱՂ, գվո ***Սյունիքի*** նհնգ-ում: Առաջացել է XIII դ-ում՝ ***Աղահեճք*** գվո-ի մասնատման հետևանքով: Կոչվել է Քաշաթաղուց բերդի անունով: Ընդգրկել է հիմնականում Աղավնո (Հագարու) գետի աջակողմյան ավազանը: Համապատասխանում է ներկայի ԼՂՀ ***Քաշաթաղի շրջանին***: XVII դ-ից հիշատակվում է Տաթևի թեմի հարկացուցակում:

ՔԱՇԱԼԱԹԱՂԻ ՇՐՋԱՆ, վտմ ԼՂՀ-ում: Սահմանակից է ՀՀ Սյունիքի մարզին, հս-ում և արլ-ում՝ ԼՂՀ Քարվաճառի, Մարտակերտի, Ասկերանի, Շուշիի, Հադրութի շրջաններին, հվ-ում՝ Իրանին: Կազմավորվել է 1993-ին ԼՂՀ հվարմ-ում՝ ազատագրված Լաչինի շրջանի և նրանից հվ ընկած տարածքներում: Տարածքը՝ 3376 *կմ*², բն.՝ 8 հզ. (2010): Վարչ. կենտրոնը՝ ***Բերձոր***: Ունի 3 քաղաք., 49 գյուղ. համայնք: Հս-ը լեռնային է, հվ-ը Արցախի, Բարգուշատի, Մեղրու լ-շղթաների նախալեռն. գոտին է: Տնտ-յան հիմն. ուղղությունը գղտ-յունն է՝ անասնապահության, այգեպտղաբուծության և բուսաբուծության ճյուղերով: Պատմաճարտ. հուշարձաններից ինագույները Կայծքարասարի, Շիրվականի, Միրիկի, Արտաշավիի, Հայթաղի բրոնզիդար. դամբարանաբլուրներն են: Հազարի գետի ձորալանջի քարանձավի պատին հայտնաբերվել է ինագույն սեպագիր արձանագրության վերջին հատվածը: Քրիստ. հուշարձաններից ամենանշանավորը Ծիծեռնավանքի Սր Գևորգ եռանավ բազիլիկն է (IV–VI դդ.): Մեզ են հասել Վարազագոմի (VII դ.), Սթունիսի (IX դ.), Կատոսավանքի (X դ.), Արախիշի (XIII դ.), Աղբաթխերտի Սր Աստվածածին (XVI դ.), Վակունիսի (XVI դ.), Միրիկի Սր Աստվածածին, Հակի Սբ Մինաս, Շալուայի Սբ Պողոս-Պետրոս, Հարարի Սբ Հռիփսիմե, Հոչանցի Սր Ստեփանոս (բոլորը՝ XVII դ.) և այլ բազիլիկ եկեղեցիներ, ինչպես նաև Հոչանցի (Հոչանցի անապատ), Տանձուտի և Ծաղկաբերդի (Քրոնքի վանք) քարանձավ. եկեղեցիները: Մելիքաշեն գ-ում պահպանվել են XVI դ-ի մելիքական ապարանքի ավերակները: Մկնատամի խաչ, Հովատուս, Արտաշավիի, Փարաջանց վանքերը հայտնի են որպես հայ գրչության կենտրոններ:

ՔԱՇՄԻՐԻ, դարդյան լեզուների ընտանիքի լեզու: Ունի Հնդկաստանի տարածաշրջ. լեզվի կարգավիճակ:

ՔԱՇՈՒՆԻ, գետ ՀՀ Սյունիքի մարզում, Որոտանի աջ վտակը: Սկիզբ է առնում Բարգուշատի լ-շղթայի հս. լանջերից՝ 2080 *մ* բարձր-ից: Երկ.՝ 34 *կմ*, ավազանը՝ 136 *կմ*²: Մնումը հալոցքային է, վարարումը՝ մայիս-հունիսին: Գետահովիտն ունի ռեկրեացիոն նշանակություն:

ՔԱՇՈՒՆԻՔ, ***Միուս Բաղք***, ***Բարկուշատ***, գվո Սյունիք նհնգ-ում: Որպես վարչ. միավոր՝ առաջացել է Բաղք գվո-ի մասնատման հետևանքով: Գրավել է Քաշունի գետի ավազանը և Բարկուշատ (Բարգուշատ) գետի աջափնյակը: XI դ-ից կոչվել է Բարգուշատ:

ՔԱՇՔԱՇՅԱՆ Քիմ (ծ. 1952), ալտահարուհի: Երկացանկում՝ Ա. Դվորժակի, Յ. Բրամսի, Փ. Հինդեմիթի երկերից: Մասնակցել է Մոսկվայի «Երկու աշխարհներ» երաժշտական փառատոների: Ալտահարների միջազգ. մրցույթի 2-րդ (1980, Լոնդոն) և 3-րդ (1980, Միլանխեն) մրց-ներ:

ՔԱՈՍ, 1. հինհուն. դից-յան ու փիլ-յան մեջ անծայրածիր տարածություն, աշխարհի նյութ. տարրերի խառնակություն, որից առաջացել են բոլոր գոյացությունները: 2. Փխր. իմաստով՝ իրերի, երևույթների խառնակ վիճակ:

ՔԱՉԱ (Խաչատրյան) Վահե (1928–2003), գրող: Գրել է ֆրանս.: Հեղինակ է «Կենդանի օրվանից մնացած ծխուկներ» (1953), «Ակն ընդ ական» (1955, հայ.՝ 1956, Ռիվարոլի մրց.՝ 1958), «Սեղմված բռունցքներ» (1958), «Արարչի ութերորդ օրը» (1960, հայ.՝ 1965, «Գրական թերթ»), «Գիշատիչների խնջույքը» (1960, հայ.՝ 1976), «Գավազան» (1963, հայ.՝ 1970, «Գարուն»), «Կապիկների նավը» (1966), «Հրեայի մահը» (1968), «Մի մարդ ընկավ փողոցում» (1975, հայ.՝ «Փողոցին մեջ ինկած է մարդ մը», 1977), «Աղմուկ, որ լավում է» (1979) և այլ վեպերի, վիպակների, սցենարների: «Մի դաշույն այս պարտեզի մեջ» (1981, հայ.՝ 1999) վեպում պատկերել է Արմ. Հայաստանի և պոլսահայության կյանքը՝ արդուլհամիդյան կոտորածներից մինչև Մեծ եղեռնը: Բ-ի ստեղծագործությունների հիման վրա նկարահանվել են կինոնկարներ:

ՔԱՋՆԱՋԱՐ, հայ ժող. բանահյուսության ու գեղ. գրկ-յան երգիծ. հերոս: Ներկայացնում է պատահականության, դիպվածի, հանգամանքների բերումով և միջավայրի հանդուրժողականության հետևանքով հաս. դիրքի, պաշտոնի, հարստության ու գահի տեր դարձած բախտախնդիր մարդուն: Թույլ, հիմար, ամբարտավան մարդն առաջնորդ է կարգվում խելոքների վրա՝ հենց խելոքների կամքով: Հայ գրկ-յան մեջ այս կերպարին անդրադարձել են Հ. Թումանյանը, Ա. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Համաստեղը, Մ. Զորյանը, Սիպիլը, Վ.Եսպերը, Մ. Սարգսյանը, Ժ. Ավետիսյանը և ուր.:

«ՔԱՋ ՆԱՋԱՐ», երգիծ. ամսաթերթ (1970–ից, Լոս Անջելես): Խմբ.՝ Հովհաննես Բալայան:

ՔԱՋԱՋՆՈՒՆԻ (Տեր-Հովհաննիսյանց) Հովհաննես (Ռուբեն) Մաթևոսի (1868–1938), հաս-քաղ., պետ. գործիչ, ճարտ.: ՀՀԴ կուս-յան անդամ: Նրա նախագծերով Բաքվում, Թիֆլիսում և Վանում կառուցվել են բնակելի և հաս. շենքեր: 1917-ի վերջ–1918-ի սկզբին եղել է ՀՀԴ ներկայացուցիչն Անդրկովկասի Սեյմում: 1917-ին ընտրվել է ՀԱԽ-ի անդամ, մասնակցել Տրապիզոնի (1918-ի մարտ–ապրիլ) և Բաթումի (մայիս–հունիս) հաշտության բանակցություններին. Ալեքսանդր ***Խատիսյանի*** և Միքայել Բաբաջանյանի հետ ստորագրել է Բաթումի պայմանագիրը: 1918–19-ին՝ ՀՀ 1-ին վարչապետ: 1919-ի փետր-ին մեկնել է Եվրոպա և ԱՄՆ՝ Հայաստանի համար օգնություն կազմակերպելու նպատակով: 1920-ի սեպտ-ին վերադարձել է Հայաստան: Խորհրդ. իշխանության հաստատվելուց հետո ձերբակալվել է, ազատվել է 1921-ի Փետր. ապստամբության ժամանակ: 1921–24-ին ապրել է Բուխարեստում, 1925-ին վերադարձել Հայաստան: Հեղինակ է «Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլևս» (1923) «Ազգ և հայրենիք» (հրտ.՝ 1979), «Բաց նամակ Z-ին, Թուրքիա թե Ռուսիա» (1990), «Հայաստանի Հանրապետության (հուշագիր)» (1993) և այլ աշխ-ների: 1937-ին անհիմն բռնադատվել է. մահացել է բանտում:

ՔԱՋԱՀԱՎ, (Plegadis falcinellus), արագիլանմանների կարգի ***իբիսների*** ընտանիքի թռչուն: Բնադրող է, չվող, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ 55–65, թևերի բացվածքը՝ 80–95 *սմ*, կ. գ.՝ 1–1,5 *կգ*: Ջրաճահճ. թռչուն է: Մնվում է որդերով, միջատներով և խեցգետնակերպներով: Արարատյան դաշտի ձկնաբուծ. տնտ-յուններում թվաքանակը նվազել է, 2003–04-ին գաղութ. բնադրման օջախներ են հայտնաբերվել նաև Արմաշի ձկնաբուծ. տնտ-յուններում: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՔԱՋԱՐԱՆ (մինչև 1951-ը՝ Քաջարանց), ք. ՀՀ Սյունիքի մարզում՝ Ողջի գետի ափին՝ Երևանից 327 *կմ* հվ: Բն.՝ 8,1 հզ. (2012):

Պղնձի և մոլիբդենի հանքավայրի շահագործման հիմքի վրա գործող ՀՀ գունավոր մետաղագործության կենտրոն է. այստեղ է ՀՀ *Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը*: Տարածքում հայտնաբերվել են բրոնզի դարի հանքախորշեր, ձուլարանների հետքեր, հանքանյութի թափոններ, պահպանվել է հեթանոս. մատուռ: Հուշարձաններից են Բաղաբերդը, Զևա, Բաղակու քար, Աղակու բերդերն ու ամրոցները, «Վերին հանդի» եկեղեցին:

ՔԱՋԱՐԱՆԻ ԼԵՌՆԱՆՅՔ, Կապուտջուղի լեռնանցք, ՀՀ Սյունիքի մարզում՝ Զանգեզուրի լ–շղթայի Կապուտջուղ լ–գագաթից հվ՝ 3280 *մ* բարձր–յան վրա: Ք. լ–ով է անցնում Կապան–Նախիջևան ճանապարհը:

ՔԱՋԱՐԱՆԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, Կապուտջուղի լեռնաշղթա, Զանգեզուրի լ–շղթայի արլ. ճյուղավորությունը ՀՀ Սյունիքի մարզում: Ձրբաժան է Ողջի և Գեղի գետերի միջև: Բարձր.՝ մինչև 3403 *մ* (Քաջբարանց լ.): Լանջերը կարճ ու զառիթափ են՝ մասնատված գետահովիտներով, լանդշաֆտը՝ լ–անտառ., լ–տափաստան. և լ–մարգագետն.:

ՔԱՋԱՐԱՆԻ ՊՂԻՆՁ–ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ, ՀՀ Սյունիքի մարզում՝ Ողջի գետի վերին ավազանում: Հետախուզվել է 1931–ից, շահագործվել 1945–ից: Արդ. նշանակության հանքայնացումը երակիկացանավոր է: Պարունակում է նաև թանկարժեք ուղեկից տարրեր՝ ոսկի, արծաթ, ռենիում, սելեն, բիսմութ ևն: Տարածված են նաև մոլիբդենն ու պղինձ պարունակող արդ. նշանակության 0,1–0,5–ից մինչև 5 *մ* հաստ–յան քվարց–ի երակներ: Հանքանյութը հարստացվում է Զանգեզուրի պղնձամոլիբդեն. կոմբինատում, մոլիբդենը կորզվում է Երևանի Մաքուր երկաթ գործարանում:

ՔԱՋԱՐԱՆՅ, գետ ՀՀ Սյունիքի մարզում: Սկիզբ է առնում Զանգեզուրի լ–շղթայի Սիսկատար գագաթի հվ–արլ. լանջերից: Քաջարան ք–ի մոտ միախառնվում է *Կապուտջուղ* գետին՝ առաջացնելով *Ողջին*: Երկ.՝ 10 *կմ*, ավազանը՝ 34,6 *կմ*^{2}:

ՔԱՋԱՐԱՆՅ, լ–գագաթ ՀՀ Սյունիքի մարզում՝ Զանգեզուրի լ–շղթայի արլ. ճյուղավորությունում: Բարձր.՝ 3403 *մ*: Քարքարոտ է, տեղ–տեղ՝ լեռնատունդր. բույսերով: Պահպանվում են ձնաբծեր:

ՔԱՋԲԵՐՈՒՆԻՆԵՐ, նախարար. տոհմ Քաջբերունիք գվռ–ում: Ք–ից Ղազար Փարպեցին հիշատակում է Ներսես իշխանին (նահատակվել է 451–ին՝ Ավարայրի ճակատամարտում), Թովմա Արծրունին՝ Գրիգոր իշխանին (որպես Տարոնի Բագարատ իշխանի աջակից):

ՔԱՋԲԵՐՈՒՆԻՔ, *Քաջբերունյաց երկիր*, գվռ Վանա լճի հս. ափին: Համապատասխանում է Տուրուբերանի Աղիովիտ գվռին: Ք. կոչվել է *Քաջբերունիների* նախարար. տոհմի տիրույթ դառնալուց հետո:

VII դ–ում նվաճել են արաբները, 1021–ից հետո ընկել է Բյուզանդիայի տիրապետության տակ, XI դ–ի 2–րդ կեսին գրավել են սելջուկ–թուրքերը, հետագայում՝ Շահ–ի Արմենները, Էյուբյանները, մոնղոլները: 1555–ի Ամասիայի և 1639–ի Կասրե Շիրինի պայմանագրերով՝ Ք. անցել է Թուրքիային՝ կազմելով Վանի նահանգ–ի Արճեշ գվռ–ը: ԱՀՊ–ի նախօրեին այստեղ բնակվել են 10–15 հզ. հայեր: Մեծ եղեռնի տարիներին հայերի մի մասը զոհվել է, փրկվածներն ապաստանել են Արլ. Հայաստանում:

ՔԱՋՎԱՐԴ (Paeonia), **արջվարդ, պիոն**, քաջվարդազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի, հազվադեպ՝ թփերի ցեղ: Հայտնի է 40 տեսակ՝ Եվրասիայի բարեխառն գոտում, ՀՀ–ում՝ 1՝ Սյունիքի մարզում: Հազարավոր սորտեր օգտագործում են գեղազարդիչ պարտեզագործության մեջ: 9 տեսակ պահպանվում է: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՔԱՋՎՈՐՅԱՆ Աշոտ Պետրոսի (1909–1970), դերասան: ՎԽՍՀ (1958), ՀԽՍՀ (1963) վաստ. արտիստ: 1929–ից՝ Թբիլիսիի հայկ. դրամատիկ. թատրոնի դերասան (Պաղտասար՝ Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար», Թորի Բելչ՝ Վ. Շեքսպիրի «Տասներկուերորդ գիշեր», Միկիչ՝ Ա. Յագարելու «Խանում», ևն): Նկարահանվել է կինոյում («Մսյո Ժակը և ուրիշները», 1964, «Կարինե», 1967, ևն, երկուսն էլ՝ Հայֆիլմ):

Որդին՝ **Ալեքսանդր Ք.** (ծ. 1944), կինոռեժ., 1966–ից՝ հայկ. հեռուստաստուդիայի, 1974–ից՝ «Երևան» ստուդիայի ռեժ.: Նկարահանել է «Արահետ դեպի երկինք» (1984), «Հին աստվածներ» (1993) գեղ., «Կոնտակտ հազարամյակներ անց» (1980), «Երգի վերադարձը» (1981), «Լուսինե» (1982), «Էդուարդ Խարազյան» (1998) վավերագր. և այլ ֆիլմեր: Միջազգ. (1980, Կանբերա), միութ. (1981, Երևան) կփ–երի Հատուկ և այլ մրց–ներ:

ՔԱՌԱԷԹԻԼԿԱՊԱՐ, $Pb(C_2H_5)_4$, անգույն յուղանման հեղուկ է, $t_{եռ.}$՝ 200°C (քայքայվելով), խտ.՝ 1,652*գ/սմ*^{3}, հնշտ բռնկվում և այրվում է: Հակաճայթիչ է շարժիչ. վառելանյութերում (պարունակվում է էթիլային հեղուկում): Թունավոր է: Արգելվում է կիրառել ավտոմեքենաների բենզիններում:

ՔԱՌԱԿՈՒՍԱՅԻՆ ՇԵՂՄԻՄ a մեծությունից, $x_1, x_2, \ldots, x_n$ դիտարկված մեծությունների շեղման քառակուսային միջինը՝ $\sqrt{[(x_1 - a)^2 + (x_2 - a)^2 + \cdots + (x_n - a)^2] : n}$:

ՔԱՌԱԿՈՒՍԻ, 1. հավասարակողմ *ուղղանկյուն*: 2. a թվի 2–րդ աստիճանը՝ $a \cdot a = a^2$:

ՔԱՌԱԿՈՒՍԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄ, 2–րդ աստիճանի հանրահաշվ. հավասարում. $ax^2 + bx + c = 0$: Ունի 2 արմատ, որոնք որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$x_{1,2} = \frac{-b \pm \sqrt{b^2 - 4ac}}{2a}.$$

Բերված Ք. հ. ունի $x^2 + px + q = 0$ տեսքը, նրա արմատները՝

$$x_{1,2} = -\frac{p}{q} \pm \sqrt{\frac{p^2}{4} - q}.$$

ՔԱՌԱՆԻՍՍ, կանոնավոր բազմանիստերի 5 տիպերից մեկը: Կանոնավոր եռանկյուն բուրգ: Ունի 4 եռանկյուն նիստ, 6 կող, 4 գագաթ (յուրաքանչյուր գագաթից ելնում է 3 կող):

ՔԱՌԱՆԻՏՈՊԵՆՏԱԷՐԻԹՐԻՏ, փշրտող պայթուցիկ նյութ: Սպիտակ բյուրեղ. նյութ է: Պայթյունի ջերմությունը՝ 5,8 *ՄՋ/կգ*: Զգայուն է հարվածի նկատմամբ: Կիրառվում է ճայթաքուղերում, պատիճ–ճայթիչներում, պենտոլիտի բաղադրությունում:

ՔԱՌԱՄՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՆՔ, XIII դ–ի ճարտ. համալիր ՀՀ Լոռու մարզի Դսեղ գ–ի հս–արմ–ում՝ Դեբեդ գետի ձորալանջին: Պահպանվել է գմբեթավոր դահլիճ տիպի եկեղեցին (1241–56)՝ Ավագ խորանի 2 կողմերում երկհարկ ավանդատներով (գմբեթը և գլանաձև թաղածածկի մեծ մասը չեն պահպանվել), պատերին կան արձանագրություններ և խաչաքանդակներ:

ՔԱՌԱՄՈՒՆԱԿՆ, սառնորակ (7,3–9°C) աղբյուրների խումբ ՀՀ Կոտայքի մարզում՝ Հատիս հրաբխ. լ–զանգվածի հվ. ստորոտին՝ Ակունք և Կաթնաղբյուր գ–երի միջև: Ք–ի աղբյուրների (ընդհ. ելքերը՝ մոտ 1450 *լ/վ*) բարձրորակ ջրերն օգտագործվում են խմելու համար: Ջրհավաք ավազանը Գեղամա լ–վահանի արմ. լանջն է: Ջրերն օգտագործվում են Երևանի ջրամատակարարման համար:

ՔԱՌԱՔԼՈՐԱԾԽԱԾԻՆ, քառաքլորմեթան, CCl_4, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 76,8°C: Հումք է ֆրեոնների ստացման և լուծիչ՝ ճարպերի, լաքերի, պոլիմերների համար:

ՔԱՌԱՔԼՈՐԷԹԻԼԵՆ, գերքլորէթիլեն, $Cl_2C{=}CCl_2$, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 121°C: Լուծիչ է և լուծահանող միջոց կաուչուկների, պլաստմասսաների և ճարպերի համար: Կիրառում են հագուստի քիմ. մաքրման համար:

ՔԱՌԱՖՏՈՐԷԹԻԼԵՆ, գերֆտորէթիլեն, $F_2C{=}CF_2$, անգույն գազ է, $t_{եռ.}$՝ – 76,3°C: *Պոլիքառաֆտորէթիլենի* և ֆտորկաուչուկների արտադր–յան հումք է:

ՔԱՌԵՐԳՈՒԹՅՈՒՆ, քառապատում, 4 ինքնուրույն երկերից (սիմֆոնիա, սոնատ ևն) բաղկացած երաժշտաբեմ. ստեղծագործությունների շարք՝ միավորված ընդհ. գաղափարով (հաճախ՝ նաև բովանդակությամբ և սյուժեով): Առավել ճանաչված են օպեր. Ք–ները (օր.՝ Ռ. Վագների «Նիբելունգների մատանին» Ք.՝ 1. «Հռենոսի ոսկին», 2. «Վալկիրիա», 3. «Զիգֆրիդ», 4. «Աստվածների վախճանը»):

ՔԱՌԹԱԿՆԵՐ (Gobio gobio), **խարակաձկներ**, ծածանաձկների ընտանիքի ձկնեռի սեռ: Երկ.՝ 5–30 *սմ*: Հայտնի է մոտ 20 տեսակ՝ Եվրասիայի քաղցրահամ ջրամբարներում: Սովոր. Ք. արդյունագործ. գիշատիչ ձկների կեր են:

ՔԱՌ–ՅԱԿ, բանաստեղծության տեսակ՝ գլխավորապես խոհափիլ. բնույթի, որն ունի կայուն ծավալ՝ 4 տող: Լայնորեն տարածված էր Արևելքի միջնադար. պոեզիայում (Հաֆեզ, Օ. Խայամ, Ռուդաքի և ուր.): Հայ գրկ–յան մեջ Ք–ներ գրել են Ն. Քուչակը, Գ. Աղթամարցին, Հ. Թումանյանը, Ե. Չարենցը, Հ. Շիրազը: Ժող. բանահյուսության մեջ Ք. անվանվել է խաղիկ, հայրեն ևն:

ՔԱՌ–ՅԱԿ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և Իտալիայի (1915–ին միացել է *Անտանտին*) ռազմաքաղ. դաշինքի անվանումը, ԱՀՊ–ի տարիներին դիմակայել է *Քառյակ միությանը*:

ՔԱՌ–ՅԱԿ ՄԻՈՒԹՅՈՒՆ, Գերմանիայի, Ավստրո–Հունգարիայի, Թուրքիայի և Բուլղարիայի ռազմաքաղ. դաշինքի անվանումը: Կազմավորվել է ԱՀՊ–ի ժամանակ՝ երկրների *Քառյակ համաձայնության* դեմ:

ՔԱՌ–ՅԱՆ Սամսոն Մանթաշի (ծ. 1938), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (2003), պրոֆ. (2005): Աշխ–ները վերաբերում են ՀՀ (1918–20) պատմությանը, պատմագրությանը [«Հայաստանի առաջին հանրապետության պատմության պատմագրություն» (2003)], Նախիջևանի պատմությանը [«Նախիջևան. դարերի խորքից մինչև մեր օրերը» (2011)] և այլ հարցերի:

ՔԱՍԱՂ, գետ ՀՀ Արագածոտնի և Արմավիրի մարզերում, Մեծամորի ձախ վտակը: Սկիզբ է առնում Արագածի հս–արլ. և

Փամբակի լ–շղթայի հվ–արմ. լանջերից՝ 2100 *մ* բարձր–ից: Երկ.՝ 89 *կմ*, ավազանը՝ 1480 *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 7,44 *մ³/վ*, առվգն՝ 188 *մ³/վ* (14.04.1953), հոսքը՝ 238 մլն *մ³* (Աշտարակ): Ապարանի ջրամբարից մինչև Օշական գ. հոսում է կանիոնով (խոր.՝ 100–150 *մ*), ստորին հոսանքում դուրս է գալիս Արարատյան դաշտ, ընդարձակվում և առաջացնում է ընդարձակ արտաերքման կոն: Վտակները՝ Գեղարոտ, Շաղվարդ, Ամբերդ ևն: Մնումը խառն է. գերակշռում է ստորերկրյան (51 %), վարարումը՝ ապրիլ–հունիսին, որի ընթացքում ձևավորվում է տարեկան հոսքի 52 %–ը, լինում են ամառ. հորդացումներ: Ջրերն օգտագործում են ոռոգման նպատակով:

ՔԱՍԱՂ–ԷՋՄԻԱԾՆԻ ՋՐՀԱՆ ԿԱՅԱՆ, ՀՀ Արագածոտնի մարզում՝ Քասաղի ձախ ափին՝ Օշական գ–ի մոտ: Շահագործման է հանձնվել 1967–ին՝ Օշական, Նորակերտ և Բաղրամյան գ–երի հողատարածքները ոռոգելու նպատակով: Տեղադրված են 4 ջրհան պոմպեր, մղման բարձր.՝ 20 *մ*, ջրի ելքը՝ 4,7*մ³/վ*:

ՔԱՍԱՂԻ ԲԱԶԻԼԻԿ, Ապարանի Սուրբ Խաչ եկեղեցի, վաղքրիստ. ճարտ. հուշարձան ՀՀ Ապարան ք–ում (պատմ. Նիգ գվռ–ի Քասախ բնակավայրում): Եռանավ բազիլիկ է՝ երկշարք 3–ական T–աձև մույթերով, աղոթասրահը՝ ներսից պայտաձև հատակագծով, դրսից՝ հնգանիստ Ավագ խորանով: 1944–47–ին պեղումներով (ղեկ.՝ Ա. Սահինյան) բացվել են Ք. բ–ի եռաստիճան որմնախարիսխը, սրահի մնացորդներ, ավանդատունը, միանավ եկեղեցու պատեր ևն: 1980–90–ական թթ–ին նորոգվել է (1996–ից՝ գործող եկեղեցի):

ՔԱՍԱՂԻ ՋՐԱՆՑՔ, ՀՀ Արագածոտնի և Կոտայքի մարզերում: Սկիզբ է առնում Քասաղ գետից: Շահագործման է հանձնվել 1973–ին: Սկսվում է ջրարգելակարգավորիչով, անցնում 2,5 *կմ* թունելով, Քասաղի կիրճով: Երկ.՝ 3,8 *կմ*, ջրթողունակությունը՝ 18 *մ³/վ*: Բաժանվում է աջ և ձախ ճյուղերի: Ձախափնյա ջրանցքը ձգվում է Քասաղից արլ., հասնում Ջորավան գ–ի սահմանները: Երկ.՝ 8,9 *կմ*, ջրթողունակությունը Արզնի–Շամիրամին փոխհատուցող ջրանցքի հետ՝ 16,4 *մ³/վ*: Կառուցվել է Արզնի–Շամիրամ ջրանցքին լրացուցիչ ջուր (14 *մ³/վ*) տալու համար: Աջափնյա ջրանցքը դյուկերով անցնում է Քասաղը, ձգվում արմ.՝ մինչև Օհանավան և Ուշի գ–երի հողատարածքները: Երկ.՝ 6,6 *կմ*, ջրթողունակությունը՝ 1,65 *մ³/վ*:

ՔԱՄԻԴ (արաբ.՝ քաղդ – նշան բռնել), բանաստեղծության կայուն ձև, տարածված է արլ., հատկապես՝ պարսկ. և արաբ. պոեզիայում: Մեծ մասամբ ունի հանդիսավոր, ներբող., երբեմն էլ՝ երգիծ. բովանդակություն: Ձևով նման է *գազելին*, բայց ծավալով անհամեմատ ավելի մեծ բանաստեղծություն է:

ՔԱՄԻՄ Աբդ ալ Քերիմ (1914–1963), Իրաքի Հանրապետության վարչապետ՝ 1958–63–ին, պաշտպ–յան նախարար և ԶՈՒ գլխ. հրամ.: 1959–ին վարել է դեմոկրատ. ուժերի ճնշման քաղ–յուն: Գնդակահարվել է 1963–ի պետ. հեղաշրջման ժամանակ:

ՔԱՄԻՄ ԱԼԻ, Քասիմ իբն Ալի, 1475–1526–ի պարսիկ մանրանկարիչ: Հերաթի մանրանկարչության դպրոցի ներկայացուցիչ: Գործերին (Ալիշեր Նավոիի «Իսկանդարի պատը», 1490–ական թթ., Նիզամու «Խամսե», 1493–94) բնորոշ են բովանդակության ժանր. մեկնաբանությունը, կերպարների առանձնահատկությունները, գույների հարստությունը, վիրտուոզ գծանկարը:

ՔԱՄՈՒՆԻ Եղիա Սարգսի (1874–1959), պատմաբան, մանկավարժ, հոգևոր գործիչ: 1937–44–ին՝ Բեյրութի Հայ ավետարան. քոլեջի տնօրեն: 1957–ից՝ ԱՄՆ–ում: Հեղինակ է «Աշոտ Ողորմած եւ իր շրջանին հայոց հոգեւորական վիճակը» (1939), «Պատմական հայ կիներ» (հ. 1, 2, 1942, 1946), «Նախահայկական Հայաստան...» (1950), «Պատմութիւն հին հայ դաստիարակութեան» (1959) և այլ աշխ–ների:

ՔԱՄՈՒՆԻ Երվանդ Հմայակի (ծ. 1937), պատմաբան, լեզվաբան, մանկավարժ, խմբ.: Պատմ. գիտ. դ–ր (1974): 1970–84–ին՝ «Հայկազեան հայագիտական հանդէս»–ի հիմնադիր–խմբ., 1991–ից՝ «Պատանեկան արձագանգ» և «Ջանասէր» ամսաթերթերի խմբ.: Հեղինակ է «Ամիդ (Տիարպէքիր) Տիգրանակերտ (Ֆարղին) շփոթը հայ պատմագրութեան մէջ» (1968), «Ռուբէն Ա. եւ Ռուբինեան իշխանութեան հիմնադրութիւնը» (1972) և այլ մենագրությունների, «Պատմաբանասիրական քննարկումներ հայ ժողովուրդի պատմության ճանապարհին» (2016) գիտ. հոդվածներ, «Մտորումներ ժողովուրդի մը, հողի եւ ազգի մը մասին» (2016) հրապարակախոս. նյութերի ժող–ների:

ՔԱՎԱՐԱՆ, վայր, որտեղ, ըստ կաթոլիկ դավանաբանության, հանգուցյալների հոգիները մաքրվում են կյանքի ընթացքում գործած և չքաված մեղքերից: Ք–ի մասին դոգման ընդունվել է 1439–ին, հաստատվել՝ 1562–ին:

ՔԱՐԱԴՐՄԱՆՄԱՆՆԵՐ (Charadriiformes), թռչունների կարգ: Ընդգրկում է 11–18 ընտանիք՝ կտցար–կաչաղակներ, քարադրներ, մորակտցարներ, բզակտուցավորներ, լողակտցարներ, ավդոտկաներ, ծիծառակտցարներ, ծովահենաորորներ, որորներ, ջրածիծառներ ևն: Հայտնի է մոտ 320 տեսակ, ՀՀ–ում՝ 62: Մի շարք տեսակներ բնադրում են գաղութներով, որոշ տեսակներ և ենթատեսակներ պահպանվում են:

ՔԱՐԱԴՐԻԴԵՐ (Charadriidae), *քարադրանմանների* կարգի թռչունների ընտանիք: Հայտնի է մոտ 60 տեսակ, ՀՀ–ում՝ 12, որից 5–ը (սպիտակապոչ եղտյուրիկ, սովոր. կիվիվ, ծով. Ք., հատակտուց Ք., փոքր Ք.) բնադրող են, մյուս 7–ի (ճախրուկ, թևաբտիկ կիվիվ, պինդիրա, մոխրագույն, ոսկեփայլ, փողկապավոր Ք.) կենսակերպն ուսումնասիրված է մասնակի:

ՔԱՐԱԹՈՒՉՆԱԿՆԵՐ (Oenantiidae), *կտնևիների* ընտանիքի թռչունների սեռ: Ճնճղուկից մինչև սարյակի մեծության թռչուններ են: Երկ.՝ 14–20 *սմ*: Կտուցը բարակ է, հիմքում՝ լայնացած, ոտքերն ուժեղ են, երկար: Հայտնի է մոտ 20 տեսակ, ՀՀ–ում՝ 7 (անապատ., շիկապոչ, պարող, սևաթիկունք, սևախածի, սևախայտ, սևավիզ և սովոր. Ք.)՝ բոլոր մարզերում: Բնադրում են ժայռաճեղքերում, գետնի վրա՝ քարերի մեջ, բներում ևն:

ՔԱՐԱԼԵՋՆԵՐ (Petromyzones), բոլորաբերանների դասի ողնաշարավոր կենդանիների ենթադաս: Ունի մեկ կարգ: Մարմնի երկ.՝ 15–100 *սմ*: Գաղթող ձևերը մի քանի տարի անցկացնում են ծովում, որտեղ կպչում են ձկներին և սնվում են նրանց արյունով ու մկաններով: Կան գետ. և մակաբույծ տեսակներ: Հայտնի է շուրջ 30 տեսակ՝ Հս. և Հվ. կիսագնդերի ջրերում: Տնտ. նշանակություն ունեն գետ., խաղաղօվկիանոս. և կասպիական Ք.:

ՔԱՐԱԽԱՉ, լ. ՀՀ Լոռու մարզում՝ Բազումի լ–ներում՝ Խորզենտակի աջափնյակում՝ Գոգարան գ–ից 8,5 *կմ* հս–արմ.: Բարձր.՝ 2728 *մ*:

ՔԱՐԱԽԱՉԻ ԼԵՌՆԱՆՑՔ, ՀՀ Շիրակի մարզում՝ Ջավախքի ու Բազումի լ–շղթաների միջև՝ 2273 *մ* բարձր–յան վրա: Շիրակի դաշտը կապում է Լոռու դաշտին: Ք. լ–ով է անցնում Գյումրի–Տաշիր ավտոխճուղին:

ՔԱՐԱԾՈՒԽ, բուս. ծագման այրվող կարծր օգտ. հանածո: Ունի ածխացման ավելի բարձր աստիճան, քան գորշ *ածուխը*: Սև է կամ գորշասև: Պարունակում է 75–97 % և ավելի ածխածին: Առաջանում է բարձրակարգ բույսերի օրգ. մնացորդների քայքայման արգասիքներից, որոնք փոխակերպվում են երկրակեղևի ապարների ճնշման և համեմատաբար բարձր ջերմաստիճանի պայմաններում: Ք. տարածված է քարածխային, պերմի և յուրայի ժամանակաշրջանների նստվածքներում: ՀՀ–ում Ք–ի փոքր քանակներ կան Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի (Ձաջուռ) մարզերում: Օգտագործվում է որպես կենցաղ. և էներգետիկ վառելիք, հումք՝ մետաղաձուլության և քիմ. արդ–յան համար:

ՔԱՐԱԿԱՔԱՎ (Alectoris), *փասիանների* ընտանիքի թռչուն: Նստակյաց է: Մարմնի երկ.՝ 32–34, թևերի բացվածքը՝ 47–52 *սմ*, կ. գ.՝ 370–770 *գ*: Հանդիպում է փոքր երամներով: Մեծ քանակով պահպանված են Վայքում: Մնվում է սերմերով, խոտաբույսերի կանաչ զանգվածով, երբեմն՝ միջատներով: Հեշտությամբ ընտելանում է անազատ (նաև տնային) պայմաններին: Արժեքավոր որսաթռչուն է: Թվաքանակը նվազում է:

ՔԱՐԱԿԱՋԱՔԻՄ (Martes foina), *կզաքիսների* ընտանիքի գիշատիչ կաթնասուն կենդանի: Մարմնի երկ.՝ 45–54, պոչինը՝ 27–37 *սմ*, կ. գ.՝ 2,5 *կգ*: ՀՀ–ում տարածված է բոլոր մարզերում: Մնվում է կրծողներով, սողուններով, երկկենցաղներով, միջատներով ևն: Մորթին արժեքավոր է: Ունի որսարդյունագործ. նշանակություն:

ՔԱՐԱԿՋԱՔԻՄ ԵԿԵՂԵՑԻ, ճարտ. հուշարձան ՀՀ Սյունիքի մարզում՝ Գորիսից 4 *կմ* հվ՝ Քարահունջ գ–ում: Կառուցվել է 1675–ին (կանգուն է): 2 զույգ T–աձև մույթերով եռանավ բազիլիկ է՝ կիսաշրջանաձև Ավագ խորանի 2 կողմերում ուղղանկյուն ավանդատներով, մուտքը՝ հվ–ից:

ՔԱՐԱՋԻ, գետ ՀՀ Գեղարքունիքի մարզում, Արգիճիի ձախ վտակը: Սկիզբ է առնում Գեղամա լ–վահանի Գեղասար լ–զագաթի հվ. լանջից՝ մոտ 3000 *մ* բարձր–ից: Երկ.՝ 25 *կմ*, ավազանը՝ 96 *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 1,61 *մ³/վ*: Մնումը ձնաանձրևային է, վարարումը՝ մայիս–հունիսին:

ՔԱՐԱՂ, *հալիտ* (հուն.՝ hals – աղ), միներալ՝ NaCl: Սովորաբար առաջացնում է հատիկավոր, խիտ զանգվածներ, ստալակտիտներ ևն: Անգույն է, փայլը՝ ապակու, կարծր.՝ 2, խտ.՝ 2,3 *գ/սմ³*: Հեշտությամբ լուծվում է ջրում: Աղահամ է: Բյուրեղանում է ծով. ջրում՝ ծովա– և չորացող մնացորդ. լճերում: ՀՀ–ում Ք. արդյունահանվում է Ավանի աղի հանքից:

ՔԱՐԱՄՅԱՆ Արամ Աշոտի (ծ. 1957), ակնաբան: Բժշկ. գիտ. դ–ր (1990): Աշխ–ները վերաբերում են եղջերաթաղանթի փոխպատվաստմանը, եղջերաթաղանթի միջշերտ. վիրաբուժությանը, ոսպնյակի մթագնման վիրաբուժ. շտկմանը:

ՔԱՐԱՄՅԱՆ Արտաշես Հովհաննեսի (1908–1989), նյարդաֆիզիոլոգ: ՀԽՍՀ (1963) և ԽՍՀՄ (1970) ԳԱ-ների թղթ. անդամ: Լևոն *Օրբելու* աշակերտը: Առաջարկել է ուղեղի զարգացման հիմն. օրինաչափությունների և նրա առանձին ինտեգրող համակարգերի զարգացման փուլերի, զգայական համակարգերի էվոլյուցիայում երկակի նյարդավորման սկզբունքներ: Ուղեղի ուսումնասիրության միջազգ. կազմ-յան անդամ:

ԽՍՀՄ ԳԱ Ի. Պ. Պավլովի (1957) և Լ. Օրբելու (1974) անվ. մրց-ներ:

ՔԱՐԱՄՅԱՆ (Մելիք-Քարամյան) Էրազմ Ալեքսանդրի (1912–1985), կինոռեժ.: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1955): ՀԽՍՀ (1964), ԽՍՀՄ (1971) ժող. արտիստ: 1936-ից՝ Հայկինոյի ռեժ.: Նկարահանել է «Հայաստանի ամառանոցները» (1940), «Սևանի կաղամաղները» (1948) վավերագր., «Ամպրոպի արահետով» (1958), «Անձամբ ճանաչում եմ» (1957), «Արտակարգ հանձնարարություն» (1965, երեքն էլ՝ Ստեփան *Կևորկովի* հետ), «Լուսաբացից մեկ ժամ առաջ» (1973) և այլ գեղ. ֆիլմեր: ՀԽՍՀ Պետ. մրց. (1967):

ՔԱՐԱՄՅԱՆ Կառլեն Հովհաննեսի (ծ. 1933), շինարար-կոնստրուկտոր: Տեխ. գիտ. դ-ր (1980), պրոֆ. (1987): Աշխ-ները վերաբերում են շենքերի և կառույցների լարվածային ձևախախտման վիճակի, ջերմախոնավ. ռեժիմի ծավալ. ներդաշնակության հարցերին: ՀՃԱ (1994), ՄՃԱ (1999) անդամ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1991):

ՔԱՐԱՄՅԱՆ Կարապետ Ներսեսի (1911–1980), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1976), պրոֆ. (1977): Հեղինակ է «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի և ազգային-ազատագրական շարժման օրինաչափության հարցի շուրջը» (1969) և այլ աշխ-ների:

ՔԱՐԱՄՅԱՆ Կոստանդին Անդրանիկի (1923–1986), երկրաբան: Երկրբ-հնքբ. գիտ. դ-ր (1977): Հիմն. աշխ-ները վերաբերում են ՀՀ մետաղ. հանքավայրերի երկրբ-յան և միներալոգիայի հարցերին:

ՔԱՐԱՄՅԱՆ Հովհաննես Սարգսի (1886–1955), քանդակագործ: Հայ քարգործ վարպետների ավանդույթներով քանդակագործել է նշանավոր կառույցներ (ԵՕՔԹ, 1935–36, Կառավար. տունը, 1936-ից, Գինու կոմբինատը, 1936, Կոնյակի գործարանը, 1952–53, ևն):

ՔԱՐԱՄՅԱՆ Հրաչյա Գրիգորի (1909–1986), մանկավարժ: Մանկավարժ. գիտ. դ-ր, պրոֆ. (1950): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): 1935–46-ին՝ Ադրբեջանի ուսուցչ. ինստ-ի փոխտնօրեն: Աշխ-ները վերաբերում են մանկավարժության մեթոդաբանությանը, երեխաների գեղագիտ. դաստիարակության տեսության և մեթոդների, մանկավարժության պատմության հարցերին:

ՔԱՐԱՄՅԱՆ Մարտին Խաչատուրի (1912–1993), գրող, թարգմանիչ: 1964–74-ին՝ ՎԽՍՀ ԳՄ հայկ. մասնաճյուղի նախագահ: Հեղինակ է «Ցասման կրակ» (1945), «Մտերիմ խոսքեր» (1952), «Հայրենիքի ճամփաներում» (1961), «Դարի բովում» (1975), «Ձմեռնամուտի արշալույս» (1982) բանաստեղծությունների, «Աշխարհը Լալվարից» (1972), «Ապրած տարիներ» (1978) պատմվածքների ժող-ների, նաև հուշերի: Կատարել է թարգմ-յուններ վրաց-ից:

ՔԱՐԱՄՅԱՆ Միխայիլ Գևորգի (1912–1992), անասնաբույծ: Գղտ. գիտ. դ-ր (1963), պրոֆ. (1965): ՀԽՍՀ բարձրագույն դպրոցի վաստ. գործիչ (1980): Աշխ-ները վերաբերում են Հայաստանում խառնացեղ ոչխարաբուծության զարգացման խնդիրներին. ստեղծել է ոչխարների զանգեզուրյան, Լոռի-Փամբակի, հայկ. կորիդել բարձր մթերատու տիպերը, բացահայտել նրանց մթերատվության ձևավորման օրինաչափություններն օնտոգենեզի ընթացքում:

ՔԱՐԱՅԾ, **լեռնայծ**, **վայրի այծ**, սնամեջ եղջերավորների ընտանիքի երկկճղակավոր կենդանի: Մնդավի բարձր.՝ 70–80 *սմ*, կ. զ.՝ մինչև 30 *կգ*: Եղջյուրները խոշոր չեն: Ապրում են Արլ. Կովկասի (հիմնականում՝ Վրաստանի և Ադրբեջանի) լեռներում: Մարզ. որսորդության և բազմացման կենդանի է:

ՔԱՐԱՌՎԱՌԻՅՏ (Coronilla), **պսակուկ**, բակլազգիների (թիթեռնածաղկավորներ) ընտանիքի միամյա կամ բազմամյա ու մանր թփերի ցեղ: Հայտնի է 20 (25) տեսակ՝ ՀՀ-ում՝ 6՝ գրեթե բոլոր մարզերում (ստորինից վերին լ-գոտի): Կան նաև դեղաբույսեր և թունավոր տեսակներ: Գեղազարդիչ է, մեղրատու:

ՔԱՐԱՎԱՆ, 1. բեռներ և մարդիկ տեղափոխող գրաստների (հիմնականում՝ ուղտեր, երբեմն՝ ջորիներ, էշեր, ձիեր ևն), ինչպես նաև սայլերի կամ ճամփորդող մարդկանց խումբ: Եղել են հիմնականում Ասիայում և Աֆրիկայում: Հայկ. լ-աշխարհով անցնող խոշոր ճանապարհները (Մետաքսի, Արքայական, Աղի, Արքունի պողոտան ևն) մեծ նշանակություն ունեին միջազգ. Ք-ային առևտրի զարգացման համար: XX դ-ից Ք. կորցրել է նախկինն նշանակությունը՝ բացի անապատ. շրջաններից: 2. Հեռավոր տարածություններ հատուկ բեռներ տեղափոխող փոխադրանավերի միավորում:

ՔԱՐԱՐԾԻՎ (Aguilla chrysaetus), *ճուռակների* ընտանիքի գիշատիչ թռչուն: Նստակյաց է, քիչ տարածված: Մարմնի երկ.՝ մինչև 90, թևերի բացվածքը՝ մինչև 149 *սմ*, կ. զ.՝ մինչև 3,85 *կգ*: Խոշոր, հզոր գիշատիչ թռչուն է՝ մուգ փետրավորմամբ: Ապրում է լեռներում, խոր ձորերում, անտառներում և այլուր: Մնվում է կաթնասուններով, թռչուններով, սողուններով, լեշերով: 1995-ից նկատվում է թվաքանակի վտանգավոր անկում:

ՔԱՐԱՐԿՂԵՐ, քարե սալերով դամբարան. ուղղանկյունաձև կառույցներ՝ տարածված բրոնզի դարում: Ք-ում թաղման ավանդույթն ընդունված էր Կովկասում և Այսրկովկասում (նաև Հայաստանում): Ք-ից հայտնաբերվել են բրոնզե բազմաթիվ զենքեր, գործիքներ, զարդեր, կավանոթներ ևն:

ՔԱՐԱՔՈՍԵՐ (Lichenes), բազմամյա ստորակարգ ինքնա- և այլասուն (ավտոհետերոտրոֆ) ցածրակարգ բույսերի առանձնահատուկ խումբ: Ձևավորվում են սնկի (ասկոմիցետ կամ բազիդիոմիցետ), ջրիմուռների (կանաչ, հազվադեպ՝ դեղնականաչավուն և գորշ) և ցիանոբակտերիաների համակեցությամբ: Տարբերում են մի քանի էկոլոգ. խմբեր: Հայտնի է մոտ 26 հզ. տեսակ: Ք. օգտագործում են հակաբիոտիկներ, բուրավետ նյութեր, լակմուս ստանալու համար: Շատ տեսակներ հս. եղջերուների կեր են:

ՔԱՐԲԵԿ (Saxifraga), **քարկոտրուկ**, քարաբեկազգիների ընտանիքի միամյա և բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 370 տեսակ՝ հս. կիսագնդի բարեխառն և ցուրտ գոտիներում, նաև Անդերում, ՀՀ-ում՝ 8՝ գրեթե բոլոր մարզերում: Շատ տեսակներ աճեցնում են որպես գեղազարդիչ: Որոշ տեսակներ դեղաբույս են:

ՔԱՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, **քարարվեստ**, քարի մշակման հինավուրց արհեստը: Ք-ով զբաղվող արհեստավորներին (քարհատ, որմնադիր, քարկոփ վարպետ, քարի վրա փորագրող և ուր.) անվանել են քարգործ: Ք. հաճախ վերափոխվել է արվ-ի և ցայսօր պահպանում է իր ավանդ. ուժն ու զորությունը, որի մասին վկայում են հայկ. ճարտ-յունը, հուշարձան-կոթողները:

ՔԱՐԵՆ ԵՓՓԵ (1876–1935), դանիացի (ծագումով՝ գերմանացի) միսիոներուհի: 1903-ին մեկնել է Արմ. Հայաստան, Ուրֆայում ստանձնել է 300 հայ որբերի խնամքն ու դաստիարակությունը: 1915-ին օգնել է Ուրֆայով անցնող տարագիր հայերին, մասնակցել *Ուրֆայի հերոսամարտին*: 1917-ին, որպես ականատես, Դանիայում հոդվածներով ու դասախոսություններով հանրությանն իրազեկել է Հայոց ցեղասպանության մասին: 1920-ից (ցկյանս) հայանպաստ գործունեություն է ծավալել Սիրիայում, 1922-ին նշանակվել է Ազգերի լիգայի լիազոր ներկայացուցիչ, գերությունից փրկել է շուրջ 200 հզ. հայ կանանց ու աղջիկների, զբաղվել նրանց տեղավորման և աշխատանքով ապահովելու հարցերով: 1947-ին Հալեպում բացվել է Ք. Ե-ի անվ. ճեմարան (գործում է ցայսօր): Դանիայի Պատվո լեգեոնի ասպետի 1-ին կարգի շքանշան (1926): 2011-ին Ք. Ե-ի շիրմահողով սափոր է ամփոփվել Մեծ եղեռնի հուշահամալիրի Հուշապատի մեջ:

ՔԱՐԵՆ ԵՓՓԵ ԱԶԳԱՅԻՆ ՃԵՄԱՐԱՆ, երկսեռ կրթ. հաստատություն: Հիմնադրվել է 1947-ին Հալեպում: Կոչվում է դանիացի միսիոներուհի *Քարեն Եփփեի* անունով: Ուսուցումը՝ ֆրանս. լիցեյի, 1958-ից՝ Սիրիայի հանրակրթ. միջնակարգ դպրոցի ծրագրով:

ՔԱՐԹԱԼՅԱՆ Արտաշես Նուբարի (ծ. 1961), կոմպոզիտոր, դաշնակահար: 1981–89-ին՝ Երևանի կամեր. թատրոնի երաժշտ. ղեկ.: Երևանում հիմնադրել է ջազ. եռյակ (1985, 1988-ին վերակազմավորվել է քառյակի): 1989-ից՝ Լոս Անջելեսում: Հեղինակ է սիմֆ. պոեմի, սիմֆ. պատկերների, երգչախմբային, կամեր., գործիք., վոկալ, ջազ., էստրադ. գործերի, կինոյի («Ժամկետը՝ յոթ օր», 1991, ևն) և թատրոնի երաժշտության: Միջազգ. և համամիութ. մրցույթների դափնեկիր:

ՔԱՐԹԵՐ (Carter) Ջեյմս (Ջիմմի) Էռլ (ծ. 1924), ԱՄՆ 39-րդ նախագահը՝ 1977–81-ին՝ Դեմոկրատ. կուս-յունից (1971–75-ին՝ Ջորջիայի նահանգապետ): Խաղաղության Նոբելյան մրց. (2002):

ՔԱՐԹԼԻ, պատմ. մարզ Արլ. Վրաստանում՝ Կուրի հովտում: X դ-ի վերջից դարձել է միասն. վրաց. պետության միջուկը, որի տրոհումից հետո առանձնացել է ինքնուրույն *Քարթլիի թագավորությունը*:

ՔԱՐԹԼԻԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ավատատիր. պետություն Արլ. Վրաստանում. առաջացել է XV դ-ի 2-րդ կեսին: Մայրաքաղաքն էր Թիֆլիսը: Գոյատևել է մինչև 1762-ը, երբ Հերակլ II թագավորի օրոք *Քարթլին* միավորվել է *Կախեթի* հետ՝ միասնական՝ *Քարթլի-Կախեթի թագավորության* մեջ:

ՔԱՐԹԼԻ-ԿԱԽԵԹԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, վրաց. պետություն: Ստեղծվել է

1762-ին՝ *Քարթլիի թագավորության* և *Կախեթի* միավորմամբ: *Գեորգիևսկի պայմանագրով* (1783) անցել է Ռուսաստանի հովանավորության տակ. Գեորգի XII-ի մահից հետո միացել է Ռուս. կայսրությանը (1801):

«ՔԱՐԹԼԻՍ ՅԻՈՎՐԵՒԱ» («Քարթլիի կյանքը» կամ «Վրաց պատմություն»), պատմ. երկերի ժող. (վրաց., հրտ.՝ 1953): Ընդգրկում է վրաց ժողդ-ի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև XVIII դ.: Կազմվել է XII դ-ում, խմբագրվել և լրացվել է հետագա դարերում: Ավանդաբար բաժանվում է Հին (XI–XIV դդ.) և Նոր (XIV–XVII դդ.) մասերի: Արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև հայերի ու Հայաստանի մասին, XII–XIII դդ-ում թարգմանվել է հայ.: Երկի՝ Հայոց պատմությանը վերաբերող մասերը հայ. թարգմանել և հրատարակել է Լևոն *Մելիքսեթ-Բեկը*՝ «Վրաց աղբյուրները Հայաստանի ու հայերի մասին» ժող-ում (1934):

ՔԱՐԹՎԵԼԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, **հարավկովկասյան լեզուներ**, իբերա-կովկաս. լեզվաընտանիքի հվ. խումբը: Ներառում է հին գրավոր վրաց. (հուշարձանները V դ-ից), անգիր մեզգրելերենը, ճաներենը, սվաներենը:

ՔԱՐԹՎԵԼՆԵՐ, վրացիների ինքնանվանումը և հինվրաց. քարթվել. ցեղերի հավաք. անվանումը:

ՔԱՐԹՐԱՅԹ (Cartwright) Էդմոնդ (1743–1823), անգլիացի գյուտարար: Ստեղծել է ոտքի շարժաբերով մանածագործ. հաստոցը (1785):

ՔԱՐԻ ԴԱՐ, մարդ. հաս-յան հնագույն ժամանակաշրջանը, որին բնորոշ է քարե գործիքների և սահմանափակ թվով նյութերի գործարկման գերակայությունը: Եվրոպայում և Հս. Ասիայում բաժանվում է հին (պալեոլիթ), միջին (մեզոլիթ) և նոր (նեոլիթ) Ք. դ-երի: Ասիայի տարածքի մեծ մասում միջին Ք. դ. չի առանձնացվում: Ամերիկայում այն ստորաբաժանում են քարի, հնադարյան և նախադաս. (ֆորմատիվ) դարաշրջանների, որոնք կարող են վերագրվել վերին հին Ք. դ-ի վերջին, միջին Ք. դ-ին և նոր Ք. դ-ին, Աֆրիկայում՝ վաղ, միջին և ուշ Ք. դդ-ին, որոնք մասամբ համընկնում են հին Ք. դ-ի և միջին Ք. դ-ի հետ:

Եվրասիայի, Հս. Աֆրիկայի, մասամբ՝ Ամերիկայի տարածքի մեծ մասերում Ք. դ-ին փոխարինել են պղնձի-քարի և բրոնզի դարերը:

Աֆրիկայում՝ Սահարայից հվ, Ք. դ-ին, որպես կանոն, հաջորդել է երկաթի դարը. այդ տարածքների մի շարք համայնքներ, Ավստրալիայի և Օվկիանիայի բնիկները շարունակել են ապրել Ք. դ-ում՝ մինչև այնտեղ եվրոպացիների հայտնվելը:

Հայաստանի տարածքում հին Ք. դ-ի հնագույն մնացորդներ (շելյան տիպի քարե գործիքներ) հայտնաբերվել են Արտենի լ-ան կայաններից (Սատանի դար, Հարավային, Արեգունի բլուրներ): Միջին Ք. դ-ի ժամանակաշրջանին են պատկանում Արագած լ-ան լանջերին, Սյունիքում հայտնաբերված *ժայռապարկղները*: Նոր Ք. դ-ի ժամանակաշրջանում Հայկ. լ-աշխարհի բնակիչները վարել են որսորդահավաքչ. տնտ-յուն, սկսել են զարգանալ երկրագործությունն ու խեցեգործությունը: Հայտնաբերվել են ոսկրե գործիքներ (հերյուններ, ասեղներ, ուլունքներ), խեցանոթներ (Սև բլուր, Աղվեսի բներ, Կողջայկ բլուր ևն), բացվել կացարանների հետքեր (Բառոժ, Տերտերի ձոր ևն):

ՔԱՐԻ ԵՎ ՍԻԼԻԿԱՏՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ, գիտատեխ. հաստատություն Երևանում: Հիմնադրվել է 1961-ին: 1961–83-ին՝ Քարի և սիլիկատների ԳՀԻ, 1983–89-ին՝ Քար և սիլիկատներ ԳԱՄ-ի միավորող կազմակերպություն, 1999-ից՝ Քար և սիլիկատներ գիտաարտադր. և նախագծային ՓԲԸ: Կատարվում են բնական քարանյութերի հատկությունների ուսումասիրման, դրանց մեքենայական հանույթի մշակման, տուֆերի, բազալտների, գրանիտների, մարմարների, պեմզաների և այլ քարանյութերի անթափոն օգտագործման հնարավոր եղանակների մշակման աշխ-ներ: Գիտաարտադր. փորձարկումներ են արվում շինանյութերի նոր արտադրատեսակների ստեղծման ուղղությամբ, որոնց փորձն. արտադր-յունն իրականացվում է ինստ-ի փորձարտ. տեղամասերում: Քարագիտ. բնագավառում լայն ճանաչում ունեն ինստ-ում մշակված քարի կտրման, հրաբխ. ապակիների փքման տեսությունները:

ՔԱՐԻ ԼԻՃ, ՀՀ Արագածոտնի մարզում՝ Արագածի մերձգագաթ. սարավանդում՝ 3190 *մ* բարձր-յան վրա: Ափերը հարթ են: Հս. ափին, լճի մակարդակից մոտ 60–70 *մ* բարձր-յան վրա, վեր է խոյանում քարափակերպ լանջերով ու քարաթափվածքներով ծածկված մի լ-գագաթ: Մակերեսը՝ 0,3 *կմ*^{2}, խոր.՝ մինչև 8 *մ*, ավազանը՝ 3,6 *կմ*^{2}, ջրի ծավալը՝ 357 հզ. *մ*^{3}: Ջուրը սառնորակ է, վճիտ, խմելու պիտանի: Ներառված է Արագածի ալպ. արգելավայրի մեջ:

ՔԱՐԻՄ Մուսթայ (Մուստաֆա Սաֆիչ Քարիմով, 1919–2005), բաշկիր բանաստեղծ: Բաշկիր. ԻԽՍՀ ժող. բանաստեղծ (1963): Սոց. աշխ. հերոս (1979): Բաշկորտոստանի Հանրապետության ԳԱ պատվ. անդամ (1992): Հեղինակ է «Տարիների հետքերով» (1971, հայ.՝ 1974), «Սիրո չորս եղանակ» (1978) քնար. բանաստեղծությունների, «Գյուղական փաստաբաններ» (1989) վիպակների ժող-ների, «Երկար-երկար մանկություն» (1976) ինքնակենսագր. վիպակի, «Մի շաղրտիր կրակը, Պրոմեթեոս» (1975) ողբերգության և այլ պիեսների:

Բաշկիր. ԻԽՍՀ Սալավաթ Յուլաևի անվ. և ՌԽՖՍՀ (երկուսն էլ՝ 1967), ԽՍՀՄ (1972) Պետ., Լենինյան (1984) մրց-ներ:

ՔԱՐԻՄՈՎ, Իսլամ Աբդուգանիևիչ (1938–2016), ուզբեկ պետ-քաղ. գործիչ, Ուզբեկստանի նախագահ՝ 1990-ից: 1989–91-ին՝ Ուզբեկստանի կոմկուսի ԿԿ 1-ին քարտուղար, 1990–92-ին՝ ՆԽ նախագահ, 1991–96-ին՝ ժողդ-դեմոկրատ. կուս-յան նախագահ: 1991-ին Ք-ի գլխավորությամբ Ուզբեկստանը միացել է ԱՊՀ-ին, 1994-ին՝ Կոլեկտիվ անվտանգության պայմանագրին, 2001-ին՝ Շանհայի համագործակցության կազմ-յանը, 2006-ին՝ ԵԱՏՄ-ին (2008-ից անդամակցությունը դադարեցվել է):

ՔԱՐԻՆՆԵՐ, գեղեցկության և նրբագեղության 3 աստվածուհիներ հուն. դից-յան մեջ: Համապատասխանում են հռոմ. գեղուհիներին (գրացիաներ):

ՔԱՐԽՈՆՈՍ (Simphytum), **զոտուկ, հայվազ**, գաղտրիկազգիների բազմամյա խոտաբույսերի կամ ցածրաճ կիսաթփերի ցեղ: Հայտնի է մոտ 20 (30) տեսակ, ՀՀ-ում՝ 3՝ գրեթե բոլոր մարզերում: Հայաստանյան Ք. բնաշխարհիկ է, հանդիպում է Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում:

ՔԱՐՇ Հովսեփ (Յուսուֆ) Ամիշի (1908–2002), լուսանկարիչ: 1932-ին Օտտավայում բացել է լուսանկարչ. ստուդիա, լուսանկարել ժամանակի մի շարք նշանավոր մարդկանց (Շ. դը Գոլ, Բ. Շոու, Ջ. Ներու, Պ. Պիկասո, Է. Հեմինգուեյ, Ն. Ս. Խրուշչով և ուր.), համաշխ. ճանաչման է արժանացել Ու. Չերչիլի լուսանկարով: Հրատարակել է «Ճակատագրի դեմքեր» (1946), «Մեծություններ որոնելիս» (1962), «Մեր ժամանակի դեմքերը» (1971) և այլ գիրք-ալբոմներ: Եղել է XX դ-ի 100 լավագույն լուսանկարիչներից (1999):

ՔԱՐՇԻ (1926–37-ին՝ Բեկ-Բուդի), ք. Ուզբեկստանում, Կաշկադարինի վիլայեթի վարչ. կենտրոնը: Բն.՝ 255 հզ. (2015): Երկթղ. հանգույց:

ՔԱՐՇԻ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ, հզորություն, որը զարգացնում է ինքնագնաց մեքենան քարշակային սարքավորման համար: Հավասար է քարշային ճիգերի և մեքենայի շարժման միջին արագության արտադրյալին:

ՔԱՐՈՒՆԴ, Երկրի վերին կարծր թաղանթը: Ընդգրկում է երկրակեղևը և վերին միջնապատյանի վերին մասը: Աշխարհագր. թաղանթի ոլորտներից է: Նյութերի շրջանառությունը Ք-ում շատ ավելի դանդաղ է ընթանում, քան մթնում, ջրոլորտում, առավել դանդաղ՝ քան կենսոլորտում:

ՔԱՐՈՆ (հին հուն.՝ K'aron – պայծառ), հանգուցյալների հոգիները Ստիքս գետով *Հադևսի* ստորերկրյա թագավորություն փոխադրողը հուն. դից-յան մեջ: Աշխ-ի դիմաց նա վարձատրվում էր հանգուցյալի լեզվի տակ դրված մանրադրամով:

ՔԱՐՎԱՃԱՌ (ք.՝ 1999-ից, մինչև 1993-ը՝ Քելբաջար, Ադրբեջանում), ԼՂՀ Նոր Շահումյանի շրջանի կենտրոնը Ստեփանակերտից 70 *կմ* հս-արլ.: Բն.՝ 650 (2010): XV դ-ում կոչվել է Հանդաբերդ: Ղարաբաղյան պատերազմից խիստ տուժել է: Կատարվում են վերականգնող. աշխ-ներ: Վերջին տարիներին Հանդաբերդի եկեղեցու տարածքում հայտնաբերվել են 180-ից ավելի խաչքարեր և խաչի ռելիեֆ. պատկերով քարեր:

ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գիտ-յուն քարտեզների կազմման մեթոդների և օգտագործման մասին: Զբաղվում է բնական ու հաս. երևույթների քարտեզագր. հետազոտությամբ և պատկերմամբ (քարտեզներ, գլոբուսներ, ատլասներ):

Հայ. 1-ին քարտեզներն ստեղծվել են հայ. առաջին ձեռագրերի հետ՝ հիմք ունենալով հուն. և հռոմ. Ք.: Միջնադար. Հայաստանում լայն ճանաչում է ստացել «*Աշխարհացոյց*»-ը: Եվրոպ. Ք-յան մակարդակով (աշխարհագր. աստիճանացանցով) հայ. 1-ին տպագիր քարտեզը «*Համապարած աշխարհացոյց*»-ն է (Ամստերդամ, 1695): Հայաստանն ու Մերձ. Արևելքն ընդգրկող քարտեզներ են հրատարակվել ՄՄ կենտրոններում (Վենետիկ, Վիեննա): XIX դ-ի կեսերին կազմվել ու հրատարակվել են նաև մեծածավալ (սեղանի) և փոքրածավալ (գրպանի) աշխարհագր. ատլասներ: 1-ին հայ. գլոբուսները պատրաստել են Մխիթարյանները: Ա. Այտընյանի հեղինակությամբ կազմվել է «Նոր երկրագունդ» 60 *սմ* տրամագծով գլոբուսը (Վիեննա, 1850): Ժամանակակից Ք. կազմված է քարտեզագիտ-յան, մաթ. Ք-յան, քարտեզների նախագծման ու կազմման և Ք-յան պատմության բաժին-

ներից: Տարբերում են երկրբ., հողագիտ., տնտ., տիեզ. և այլ Ք-ներ:

ՔԱՐՏԵԶՆԵՐ (հուն.՝ kartes – թերթ, փաթույթ), Երկրի, երկն. մարմինների կամ երկնոլորտի մակերևույթի փոքրացված, ընդհանրացված պատկերը հարթության վրա որևէ քարտեզագր. պրոյեկցիաների և պայման. նշանակումների համակարգում: Երկրի և հաս-յան ճանաչման գիտ-յունների կարևորագույն գիտ. միջոց են:

ՔԱՐՏԵԶՆԵՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ, Երկրի մակերևույթի փոքրացված և ընդհանրացված պատկերներ հարթության վրա, որոնք ցույց են տալիս բնական և հաս. երևույթների տեղաբաշխումը, զուգորդումն ու կապերը: Ք. ա. խմբավորում են՝ ըստ տարածքի ընդգրկման (աշխարհի, կիսագնդերի, օվկ-ների և ծովերի, մայրցամաքների, առանձին պետությունների ևն), ըստ բովանդակության (ընդհ. աշխարհագր. և թեմատիկ), ըստ նշանակության (տեղեկատու, ուս., գլոբուսշրջային, նավարկություն, նախագծ.), ըստ մասշտաբի ևն:

ՔԱՐՏԵԶՆԵՐ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ, բովանդակությամբ, ձևավորմամբ և մաթ. հիմքով միասն. մանրամասն աշխարհագր. քարտեզներ, որոնց վրա պատկերվում են տեղանքի բնական և սոցիալ-տնտ. օբյեկտները՝ նրանց յուրահատուկ քանակ. ու որակ. բնութագրումներով և տեղաբաշխման առանձնահատկություններով: Նախատեսվում են բազմանպատակ (տնտ., գիտ., ռազմ., գլոբուսշրջային) օգտագործման համար: Ք. տ-ի շարքին դասվում են նաև ֆոտոքարտեզներն ու ծով. Ք. տ. (ծանծաղուտ. գոտու համար):

ՔԱՐՏԵՐ (անգլ.՝ carter, անգլիացի ճարտարագետ Ջ. Հ. Քարտերի անունով), սովորաբար մեքենաների և մեխանիզմների (շարժիչի, ռեդուկտորի ևն) տուփային հատվածքով իրանային հիմնամաս՝ աշխ. դետալների հենման և դրանք աղտոտումից պահպանման համար: Ավտոմոբիլ. շարժիչների Ք-ի ստորին մասը՝ տակնոցը, նաև քսայուղի պահեստարան է:

ՔԱՐՓԵՆԹԵՐ (Carpenter) Մալքոլմ Սքոթ (1925–2013), ԱՄՆ աստղագնաց: Թռել է «Մերկուրի» տիեզերանավով (1962-ի մայիս): Թռիչքի տևողությունը՝ 4 *ժ* 56 *ր* 5 *վ*: 1967-ին հեռացել է ՆԱՍԱ-ից:

ՔԱՑԱԽԱԹԹՈՒ, CH_3COOH, անգույն, սուր հոտով հեղուկ է: Անջուր, այսպես կոչված, սառցային Ք-ի $t_{հալ.}$՝ 16,64°C, $t_{եռ.}$՝ 117,8°C: Մննդ. Ք. ստանում են սպիրտ. հեղուկների քացախաթթվային խմորմամբ: Կիրառում են սննդի արդ-յան մեջ, դեղանյութեր և բուրավետ նյութեր, քլորքացախաթթու ստանալու համար, որպես լուծիչ՝ օր.՝ թաղանթանյութի ացետատի արտադր-յան մեջ: Ք-ի աղերն ու էսթերները կոչվում են ացետատներ:

ՔԱՑԱԽԱՀՅՈՒԹ, **քացախային էսենցիա**, սննդ. *քացախաթթվի* 80-%-անոց ջր. լուծույթի ապրանք. անվանումը: Մաշկի վրա ընկնելիս առաջացնում է այրվածք:

ՔԱՑԱԽՅԱՆ Մեյա Գևորգի (ծ. 1934), փիլ.: Փիլ. գիտ. դ-ր (1987): Աշխ-ները վերաբերում են գեղագիտ-յան, հոգեբ-յան (գիտակցականի և անգիտակցականի հարաբերակցությունը, անձի հոգեվիճակը և կողմնորոշումն արտակարգ պայմաններում), երաժշտության, քրիստոնեության հարցերին («Գեղարվեստական ընկալումը և արդիականությունը», 1991, «Աշխարհայացք և գեղարվեստական ստեղծագործություն», ռուս., 1991, ևն):

ՔԱՈՒԿԻԼ (Cowgill) Ուորրեն (1929–1985), ամերիկացի լեզվաբան: Տիրապետել է հայ-ին: Ամերիկ. լեզվաբ. ընկ-յան նախագահ: Ք-ի կարծիքով՝ հնդեվրոպ. լեզուն հնդկերենի ճյուղ է, որի հետ ավելի շատ՝ քույր, քան դուստր լեզու է: Ստուգաբանել է հայ. «այրի» բառը:

ՔԱՓԱՆԱԿՅԱՆ Ստեփան Գրիգորի (1877–1944), ռեժ., թատեր. գործիչ: ՎԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1941): 1909-ից՝ Թիֆլիսի Հայոց դրամատիկ. ընկ-յան թատերախմբի ռեժ., 1923–44-ին ղեկավարել է Թիֆլիսի Հայ դրամայի, Պատանի հանդիսատեսի, Բաքվի հայկ. թատրոնները: 1921-ին Թիֆլիսում (Լևոն *Քալանթարի* հետ) հիմնադրել է «Որոնումների թատրոնը» (Հ. Հեյերմանսի «Հույսի կործանումը», 1921, «Բոռո»՝ ըստ Է. Վոյնիչի, 1925, Շիրվանզադեի «Մորգանի խնամին», 1927, ևն): Գեղ. ասմունքի վարպետ էր:

ՔԱՓՈՒՐ, անգույն, բնորոշ հոտով բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 178–178,5°C: Պարունակվում է մի շարք եթերայուղերում: Թաղանթանյութի նիտրատի և ացետատի պլաստիկարար է (ցելուլոիդի և կինոժապավենի արտադր-յան մեջ), նյարդ. գործունեությունը խթանող դեղանյութ:

ՔԱՖՈՒՐԻՈՍՆ (Camphorosma), թելուկազգիների ընտանիքի միամյա կամ բազմամյա խոտաբույսերի կամ ցածրաճ կիսաթփերի ցեղ: Հայտնի է 10 տեսակ, ՀՀ-ում՝ 1՝ Արարատի, Գեղարքունիքի, Սյունիքի և այլ մարզերում: Պարունակում է մոտ 0,2 % եթերայուղ: Դեղաբույս է:

ՔԵԼԵԿՅԱՆ Տիգրան Կարապետի (1868–1951), ազգ-հաս. գործիչ, դիվանագետ, հավաքորդ: 1901–22-ին՝ Իրանի հյուպատոսը Նյու Յորքում: Պարսից շահից ստացել է խանի տիտղոս: 1912-ին հիմնադրել է Դյորթ Յոլի (Ադանայի նհնգ) «Քելեկյան» որբանոցը (հետագայում փոխադրվել է Բեյրութ, գործել է մինչև 1932-ը): Ք-ի հավաքածուն (միջագետքյան, ղպտիական, պարսկ., բյուզ., հայկ. գորգեր, ձեռագրեր, հախճապակի ևն) ցուցադրվել են Փարիզում (1907), Լոնդոնում (1912, 1913): Ք. ՀԱՊ-ին է նվիրել հայ նկարիչների 18 նկար, Մնդղ-ին՝ Իգնատիոսի նկարազարդած Ավետարանը (XII դ., ձեռ. № 9649): Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» շքանշան:

ՔԵՀՅԱՆ Հարություն Լևոնի (1930–2015), ֆուտբոլիստ, մարզիչ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1960): ՀՀ վ. մ. (1979), ֆիզկուլտուրայի և սպորտի վաստ. աշխատող (1990): 1949–50-ին՝ Երևանի «Դինամո», 1955-ին՝ Մոսկվայի, 1960–61-ին Երևանի «Սպարտակ» թիմերի կազմում մասնակցել է առաջնության 87 խաղի, խփել 9 գոլ: 1971–74-ին՝ Երևանի «Արարատի» մարզիչ, 1993-ից՝ «Հրազդան» մարզադաշտի տնօրեն:

ՔԵՄԱԼ Մուստաֆա, **Աթաթյուրք** (1881–1938), թուրք պետ., քաղ. և ռազմ. գործիչ: Գլխավորել է թուրք. ազգայնական շարժումը (1918–23, կոչվել է քեմալ. շարժում): Թուրքիայի Հանրապետության հիմնադիրն է և 1-ին նախագահ՝ 1923–38-ին: Մասնակցել է ԱՀՊ-ին. 1916-ին ստացել է գեն-ի կոչում և փաշայի տիտղոս: 1919–1922-ի *Հույն-թուրքական* պատերազմում ղեկավարել է թուրք. զորքերը (1921-ից՝ մարշալ): Ազգ. հարցում իրականացրել է ոչ թուրք. ժողղ-ների (հայեր, հույներ, քրդեր) բռնի ձուլման և ֆիզիկ. ոչնչացման քաղ-յուն: 1920-ի աշնանը պատերազմ է սանձազերծել Հայաստանի առաջին հանրապետության դեմ: Քեմալա-բոլշևիկյան մերձեցման արդյունքում՝ 1921-ի մարտի 16-ին կնքվել է ***Մոսկվայի պայմանագիրը***, ապա՝ ***Կարսի պայմանագիրը***, որոնցով Թուրքիային ու Ադրբեջանին են տրվել հայկ. հողերի զգալի տարածքներ:

«ՔԵՄԱԼԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ», թուրք. ազգայն. հեղ-յուն, որն իրականացվել է Մ. Քեմալ Աթաթուրքի գլխավորությամբ 1918–23-ին: Վերացվել են սուլթանությունը (1922) և խալիֆությունը (1924), Թուրքիան հռչակվել է հանրապետություն (1923), չեղյալ են հայտարարվել կապիտուլյացիայի վարչակարգը, միջազգ. ֆին. վերահսկողությունն ու արտ. կոնցեսիոներների արտոնությունները:

«Ք. հ.» քեմալ. դիվանագիտ-յան հաջողություններից էր ԱՀՊ-ում պարտված Թուրքիայի՝ պարտականությունների զգալի մասի կատարումից հրաժարվելու համար:

ՔԵՄԲՐԻՈ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ (հմ. կարգ, փուլ) (< լատ. Cambria – Ուելսի հին անվանումը), պալեոզոյան խմբի 1-ին փուլը: Տևողությունը՝ մոտ 45 մլն տարի (535 մլն-ից մինչև 490 մլն տարի առաջ): Առանձնացրել է անգլիացի երկրաբան Ա. Սեջվիկը (1785–1873) 1835-ին Ուելսում: Ստորաբաժանվում է 3 բաժնի: Ք. ժ-ի նստվածքները լայնորեն տարածված են և հայտնի են բոլոր մայրցամաքներում: Ք. ժ-ի վերջին կային արդեն կենդ. աշխարհի գրեթե բոլոր տիպերը: Վաղ քեմբրիի վերջին արխեոցիատները գործնականում լրիվ անհետացել են: Ք. ժ-ի նստվածքները ՀՀ-ում տարածված են Քասաղ գետի ավազանում, Ջանգեզուրում:

ՔԵՄԲՐԻՋ (Cambridge), ք. Մեծ Բրիտանիայում (Անգլիայում)՝ Քեմ գետի ափին: Բն.՝ 117 հզ. (2010): Հայտնի է որպես հնագույն (1209-ից) համալսարան. քաղաք: Կան մի շարք ԳՀ և գիտաարտադր. ընկ-ներ: Հիմնադրել են հռոմեացիները մ. թ. I դ-ում:

ՔԵՄԲՐԻՋ, Քեյմբրիջ, ք. (1864-ից) ԱՄՆ հս-արլ-ում, Բոստոնի արվարձանը: Բն.՝ 108,2 հզ. (2010): ԱՄՆ խոշոր ԳՀ և կրթ. կենտրոններից է: Ք-ում են Հարվարդի համալսարանն ու Մասսաչուսեթսի տեխնոլոգ. ինստ-ը: Զարգացած է համակարգչ. ծրագրերի և դեղերի արտադր-յունը: Հիմնադրվել է 1630-ին:

ՔԵՄԲՐԻՋԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Եվրոպայի հնագույն համալսարաններից, ԳՀԻ: Հիմնադրվել է 1209-ին Մեծ Բրիտանիայի *Քեմբրիջ* ք-ում: Տարբեր տարիների Ք. հ-ում դասավանդել են Թ. Մորը, Էրազմ Ռոտերդամցին, Ֆ. Բեկոնը, Ի. Նյուտոնը, Չ. Դարվինը և ուր.: 2015-ին ուներ ավելի քան 18 հզ. ուսանող: Ք. հ-ի շրջանավարտներից շուրջ 90-ը դարձել են Նոբելյան մրցանակակիրներ: Անգլիայում XVI դ-ի վերջերից համալսարանը դարձել է ժամանակի առաջավոր գիտ. կենտրոն:

ՔԵՄՈ... (հին լատ.՝ chemia – *քիմիա*), բարդ բառերի մաս. ցույց է տալիս քիմիային կամ քիմ. շարժընթացներին վերաբերելը (օր.՝ *քեմոսինթեզ*):

ՔԵՄՈԸՆԿԱԼՈՒՄ, **քեմոռեցեպցիա**, օրգանիզմի հավաքական զգացողությունը քիմ. նյութերի ցածր կոնցենտրացիաների հանդեպ, որն իրականացվում է հոտառության և համի օրգաններով (քեմոընկալիչներ): Լայն իմաստով՝ քեմոընկալիչների փոխազդեցությունն ինչպես օրգանիզմում առաջացող (օր.՝ նյարդ. համակարգի միջնորդանյութեր), այնպես էլ

արտաքին միջավայրից ստացված տարբեր քիմ. ազդակների հետ:

ՔԵՄՊՆ (Carum), **քիմոն, չաման**, նեխուրազգիների (հովանոցավորներ) ընտանիքի երկամյա կամ բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 30 տեսակ՝ Եվրասիայում, ՀՀ-ում՝ 3՝ Արագածոտնի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Կոտայքի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերի ալպ. մարգագետիններում: Սովոր. Ք. եթերայուղատու մշակաբույս է (սերմերը պարունակում են մինչև 7 % եթերայուղ, պտուղները համեմունք են): Բարեխառն գոտու բույս է: Հայաստանի Կոմարովի Ք. գրանցված է ՀՀ Կարմիր գրքում: Հատիկներից պատրաստում են բաստուրմայի խյուս:

ՔԵՄՈՄՆԵԹԵԶ, ածխածնի երկօքսիդից օրգ. նյութերի առաջացման կենսընթացը՝ որոշ բակտերիաներով անօրգ. միացությունների (ամոնիակ, ջրածին, ծծմբի միացություններ են) օքսիդացման ժամանակ անջատված էներգիայի հաշվին: Քեմոսինթեզող բակտերիաները լուսասինթեզող բույսերի և մանրէների հետ կազմում են ինքնասուն օրգանիզմների խումբ: Ք. հայտնագործել է Ս. Ն. *Վինոգրադսկին* XIX դ-ի վերջին:

ՔԵՄՊԵՎԻԴՅԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԵՐ 1978, ստորագրվել են ԱՄՆ Քեմպ Դեվիդ ք-ում սեպտ. 17-ին՝ Իսրայելի, Եգիպտոսի և ԱՄՆ-ի (վկա) միջև: Նախատեսել են սահմանափակ ինքնավարություն՝ Հորդանան գետի արմ. ափի պաղեստինցիների և Գազայի հատվածին: Հիմք է ծառայել եգիպտա-իսրայել. հաշտության պայմանագրի (1979) ստորագրման համար:

ՔԵՄՈՒՐՋՅԱՆ, Քեմուրջիան, Ալեքսանդր Լևոնի (1921–2003), ավիակոնստրուկտոր: Տեխ. գիտ. դ-ր (1971), պրոֆ. (1971): Տիեզ. տրանսպորտ. մեքենաշինության հիմնադիրներից: 1909–71-ին՝ Համառուսաստան. տրանսպորտ. մեքենաշինության ԳՀԻ փոխտնօրեն և գլխ. կոնստրուկտոր, 1991-ից՝ գլխ. խորհրդական: Աշխ-ները վերաբերում են շարժիչների հովացման բարձրջերմաստիճան. համակարգերին, «Լուսնագնաց» կայանների ինքնագնաց շասսիների, մասնագիտացված ռոբոտների, *Մարսի* և նրա արբանյակ *Ֆոբոսի* մակերևույթի, *Վեներայի* ֆիզ. հատկությունների ուսումնասիրման շարժ. սարքերի ստեղծման հարցերին:

Տիեզ. տարածքների հետազոտման հանձնաժողովի (Ֆրանսիա) թղթ. անդամ: Լենինյան մրց. (1972):

ՔԵՅՆՍ (Keynes) Ջոն Մեյնարդ (1883–1946), անգլիացի տնտեսագետ և հրապարակախոս, *քեյնսականության* հիմնադիրը: Հեղինակ է «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն» (1936) աշխ-յան:

ՔԵՅՆՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, տնտ-յան պետ. կարգավորման տեսություն: Առաջացել է 1930-ական թթ-ի 2-րդ կեսին, էական ազդեցություն է թողել ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և այլ երկրների տնտ. քաղ-յան վրա: Հիմն. սկզբունքները ձևակերպել է Ջ. Մ. *Քեյնսը*: Ք. հետազոտում է տնտ-յան կայունացման գործն. ուղիները, մակրոտնտ. ցուցանիշների՝ ազգ. եկամտի, կապիտալ ներդրումների, զբաղվածության, սպառման ևնի քանակ. կապերը: Ըստ Ք-յան՝ վերարտադր-յան վճռորոշ ոլորտը շուկան է, հիմն. նպատակները՝ «արդյունավետ պահանջարկի» և «լրիվ զբաղվածության» ապահովումը: Տնտ. ծրագիրը ներառում է պետ. բյուջեի ծախսերի ավելացումը, հանր. աշխ-ների ընդլայնումը, շրջանառության մեջ դրամի քանակի ավելացումը, զբաղվածության կարգավորումը ևն:

ՔԵՅՏԱ (Keita) Մոդիբո (ծ. 1942), Մալիի վարչապետ՝ 2015–17-ին, 2014-ին ղեկավարել է Ալժիրում Մալիի և Հա-ի զինված խմբավորումների ներկայացուցիչների միջև խաղաղության բանակցությունները:

ՔԵՅՓԹԱՈՒՆ (անգլ.՝ Cape Town), **Կապշտադ** (աֆրիկաանս՝ Kaapstad), ք-նվինգստ ՀԱՀ-ում, Արմ. Քեյփ պրովինցիայի վարչ. կենտրոնն Ատլանտ. օվկ-ի ափին: ՀԱՀ-ի խորհրդարանի նստավայրն է, խոշոր տրանսպորտ. հանգույց: Բն.՝ 3,65 մլն (2010): Հիմնադրել են հոլանդացիները 1652-ին:

ՔԵՆԴԱԼ (Kendall) Էդուարդ (1886–1972), ամերիկացի կենսաքիմիկոս: Ուսումնասիրել է մակերիկամի կեղևի հորմոնների կառուցվածքը և ֆիզիոլոգ. ազդեցությունը: Հայտնաբերել է կորտիզոնը (Թ. *Ռայխշտայնից* անկախ): Նոբելյան մրց. (1950, Ֆ. *Հենչի* և Թ. Ռայխշտայնի հետ):

«ՔԵՆԴԼ» ՍԻՆԵՔՐՈՏՐՈՆԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ, հիմնադրվել է 2001-ին՝ Հայաստանում գերժամանակակից CANDLE (Center for the Advancement of Natural Discoveries using Light Emission, թարգմ.՝ սինքրոտրոն. լույսի օգտագործմամբ գիտ. հետազոտությունների կենտրոն) արագացուցչ. համալիր կառուցելու նպատակով: Candle ծրագիրը ներկայացնում է 3 ԳԷՎ էներգիայով 3-րդ սերնդի արագացուցչ. կուտակիչ համալիրի վրա հիմնված լուս. ճառագայթման աղբյուր: Համալիրի մոտ 40 կայանները հնարավորություն կտան ժամանակակից գիտ. հետազոտություններ կատարել ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, բժշկության, շրջակա միջավայրի, նյութագիտության, դեղագործության, նանոէլեկտրոնիկայի և միկրոարտադրության բնագավառներում: Համագործակցում է Գերմանիայի DESY ազգ. արագացուցչ. կենտրոնի (Համբուրգ), Շվեյցարիայի Paul Scherrel ինստ-ի (Վիլգեն) և արտերկրի այլ կենտրոնների հետ: Տնօրեն՝ ֆիզմաթ. գիտ. դ-ր, պրոֆ. Վասիլի Ցականով:

ՔԵՆԵ (Quesnay) Ֆրանսուա (1694–1774), ֆրանսիացի տնտեսագետ: Ֆիզիոկրատների դպրոցի հիմնադիրը: Մշակել է հաս. վերարտադր-յան հիմնախնդիրները: Գլխ. աշխ-ը «Տնտեսական աղյուսակ» (1758):

ՔԵՆԵԴԻ (Kennedy) Ջոն Ֆիցջերալդ (1917–1963), ԱՄՆ 35-րդ նախագահ՝ 1961–63-ին՝ Դեմոկրատ. կուս-յունից: 1941–45-ին՝ ՌԾՈՒ սպա, 1947–61-ին՝ ԱՄՆ սենատոր: Առաջարկել է սոցիալ-տնտ. բարեփոխման ծրագիր: Հանդես է եկել հանուն ԱՄՆ ՋՈՒ և ռազմաքաղ. դաշինքների ամրապնդման, կողմ էր ԽՍՀՄ-ի հետ հարաբերություններում ավելի իրական քաղ-յուն վարելուն: Սպանվել է Դալասում (Տեխասի նահց):

ՔԵՆԹ (Kent) Ռոքուել (1882–1971), ամերիկացի նկարիչ, գրող, հաս. գործիչ: ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի պատվ. անդամ (1962): Նկարներում, ուրվանկարներում, փորագրանկարներում ցայտուն կերպով պատկերել է հս. երկրների բնությունը, հասարակ մարդկանց արիությունը («Ծովի աշխատավորները», 1907, ևն): Հեղինակ է «Վայրի երկրամասում» (1920), «Ես եմ, Տեր» (1955) գրքերի: Երկու անգամ այցելել է Հայաստան և ջերմորեն արտահայտվել երկրի ու հայ ժողդ-ի մասին:

Լենինյան միջազգ. մրց. (1967):

ՔԵՆԻԱ, (Kenya), հանգած հրաբուխ Արլ. Աֆրիկայում: Բարձր.՝ 5199 *մ*: Գագաթին կան սառցադաշտեր:

ՔԵՆԻԱ, Քենիայի Հանրապետություն (Republic of Kenya**),** պետություն Արլ. Աֆրիկայում: Սահմանակից է Հվ. Սուդանին, Եթովպիային, Սոմալիին, Տանզանիային և Ուգանդային: Տարածքը՝ 582,6 հզ. *կմ²*, բն.՝ 46,6 մլն (2016): Մայրաքաղաքը՝ *Նայրոբի*: Պետ. լեզուները՝ անգլ., սվահիլի: Կառավարման ձևը՝ նախագահահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը: Կազմված է 47 վարչ. օկրուգներից: Հավատացյալների մեծ մասը քրիստոնյա է (բողոքական և կաթոլիկ), կան նաև մահմեդականներ և ավանդ. հավատալիքների հետևորդներ: Անդամակցում է ՄՄԿ-ին, Աֆրիկ. միությանը, Ազգերի համագործակցությանը ևն: Զարգացող աղքատ երկիր է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 1,6 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է գյուղմթերք, ձուկ, նավթամթերք, ցեմենտ, հանքանյութ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, սննդամթերք, քիմիկատներ, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ քենիական շիլլինգ:

XI–XV դդ-ում Ք-ի տարածքում առաջացել են առաջին ք-պետությունները: XV դ-ից պարբերաբար զավթել են պորտուգալացիներն ու արաբները: XIX դ-ում սկսվել է Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի ներթափանցումը: 1895-ին դարձել է բրիտ. տիրույթ, 1920-ից՝ Մեծ Բրիտանիայի գաղութ: Անկախության համար 1952–56-ի ապստամբությունը, որը ճնշել են գաղութ. իշխանությունները, հանգեցրել է կառավարման ձևի փոփոխության: 1963-ին Ք-ին տրվել է ներքին ինքնավարություն, նույն տարում հռչավել է անկախ պետություն: 1991-ի սահմանադր. փոփոխություններով մտցվել է բազմակուս. համակարգ: 2002-ից իշխանության ղեկին Ք-ի աֆրիկացիների ազգ. միությունն է (հիմն.՝ 1960): 2002–13-ին Ք-ի նախագահը Մ. Կիբակին էր, 2013-ից՝ Ու. Կենյատտան:

ՔԵՆԻԱՏԱ (Kenyatta) Ջոմո (1894–1978), Քենիայի նախագահ՝ 1964-ի դեկտ-ից: 1960-ից (1974-ից՝ ցկյանս) Քենիայի «Աֆրիկյան ազգային միություն» կուսյան նախագահ, վարչապետ՝ 1963–64-ին:

ՔԵՇԻՇՅԱՆ Ալեք Գևորգի (ծ. 1964), կինոռեժ.: 1968-ից՝ ԱՄՆ-ում: Մանկուց հանդես է եկել Բոստոնի Լիրիկական օպերայի, ապա՝ նաև դրամատիկ. թատրոններում: Ճանաչվել է «Ճշմարտություն կամ համարձակություն: Մադոննայի հետ ճանապարհին, հետնաբեմում և անկողնում» ֆիլմով (1991): Այլ ֆիլմերից են՝ «Հարգանքներով» (1994, սցենարիստ և պրոդյուսեր՝ Ք.), «Սեր և այլ աղետներ» (2006), «Մեն: Հավատում ենք սիրուն» (2011, սցենարի համահեղ., Մադոննայի հետ) ևն:

ՔԵՇԻՇՅԱՆ Գրիգոր Սամվելի (1921–1980), գրող, թարգմանիչ, խմբ.: Հունաստանից հայրենադարձել է 1946-ին: 1970–80-ին աշխատել է Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրությունում: Հեղինակ է «Պատմվածքներ» (1954), «Քեզնից հեռու, քեզ հետ» (1962), «Կտակը» (1981) և այլ պատմվածքների ու վիպակների,

«Երկնքում շատ աստղեր կան» (1977) և այլ մանկ. պատմվածքների ժող–ների, «Կղզի նման չիք մեր Կիպրիա» (1970) վիպակի: Թարգմանել է Վ. Սարոյանի, Մ. Տվենի, Ա. Քամյուի գործերից:

ՔԵՇԻՇՅԱՆ Հակոբ Նազարի (1911–1986), գործանկարիչ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1954): Հայրենադարձել է 1932–ին: 1932–44–ին՝ Հայաստանի գործմիության նկարիչ, 1944–62–ին՝ գլխ. նկարիչ: Ք–ի գծանկարներով վերարտադրվել են մի քանի վիշապագորգեր («Երևան», «Անահիտ»): Հեղինակ է շուրջ 60 անուն գորգերի («Սևան», «Այգեստան», «Հայաստան» ևն), գորգ–դիմանկարների («Բոգդան Խմելնիցկի», 1954, Կիև, ևն), 3 մեծաչափ գորգերի: Գորգարվ–ում Ք–ի նորամուծություններից է զգած գույնզգույն բրդերով, առանց ոլորքի հանգուցախավերի հյուսումը: Միջազգ. մրց–ներ (1937, Փարիզ, ոսկե մեդալ, 1939, Նյու Յորք, Մեծ մրց., 1958, Բրյուսել, արծաթե մեդալ, 1965, Լայպցիգ, ոսկե մեդալ):

ՔԵՇԻՇՈՎ Կոնստանտին Օդիսեյի (ծ. 1945), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1984), պրոֆ. (1997): ՌԳԱ թղթ. անդամ (1997): Աշխ–ները վերաբերում են ցածր ջերմաստիճանների ֆիզիկային, գերհաղորդականության, նյութերի թունելային տեղափոխման ու բյուրեղացման հարցերին, ֆիզ. փորձի տեխնիկային: Լենինյան մրց. (1986):

ՔԵՈՆՋՅԱՆ (Քեոնջյան) Վիտալի Պավելի (ծ. 1946), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1981), պրոֆ. (1989): 1994–ից՝ «Ալյանս Գրուպ» արտադր. տեխնոլոգ. միավորման նախագահ, զբաղվում է նոր տեխնոլոգիաների առևտրայնացման և բարձր տեխնոլոգիաների շուկայի զարգացման հարցերով, 2001–ից՝ Միջուկ. զենքի չտարածման և էկոլոգ. առողջացման ընկերակցության նախագահ (Մոսկվա): Աշխ–ները վերաբերում են օվկ–ների երկրաֆիզ. դաշտերի մոդելավորման, ծովի էկոլոգիայի, միջուկ. վառելիք. թափոնների պահպանման ու անվտանգության հարցերին: Նրա ղեկավարությամբ ստեղծվել են «Սպրուտ» և «Արգոս» տեխ. համակարգերը, որոնց միջոցով նմանակվում են բնական և մարդահարույց դաշտերն ու շարժընթացները ծով. միջավայրում: ՌԽՆԳԱ, Նյու Յորքի ԳԱ, Կենսոլորտի միջազգ. կոմիտեի, ՌԴ նախագահի քաղ–յան և էկոնոմիկայի խորհրդի անդամ, Սևծով. ջրատարածքի շրջակա միջավայրի ուսումնասիրությունների ռուս–բուլղ. համատեղ նախագծի գիտ. ղեկ.:

ՔԵՈՍԱՅԱՆ Էդմոնդ Գարեգինի (1936–1994), կինոռեժ.: ՀԽՍՀ, ՌԽՖՍՀ (1976), ՎԽՍՀ (1980) արվ. վաստ. գործիչ: 1964–ից՝ Մոսֆիլմի, 1972–76–ին՝ Հայֆիլմի ռեժ.: Ֆիլմերից են՝ «Խոհարարուհին» (1966), «Երբ գալիս է սեպտեմբերը» (1976) ևն: Առավել ճանաչված են «Անորսալի վրիժառուներ» (1967), «Անորսալիների նոր արկածները» (1968), «Ռուսական կայսրության թագը կամ Նորից անորսալիները» (1971) ֆիլմաշարը, «Տղամարդիկ» (1973, սցենարը՝ Ք–ի), «Հուսո աստղը» (ըստ Ս. Խանզադյանի «Միխթար Սպարապետ» վեպի, 1978, երկուսն էլ՝ Հայֆիլմ) ևն ֆիլմերը: Նկարահանվել է կինոյում: Համ.ԿԵՄ մրց. (1968):

Որդին՝ **Տիգրան Ք.** (ծ. 1966), կինոռեժ.: Նկարահանել է «Կատկան և Շիզը» (1992), «Նախագահը և նրա թոռնուհին» (1999), «Արծաթե հովտաշուշան» (2000), «Տղամարդկային գործ» (2001), «Երեք ընկեր» (2012), «Ծով, լեռներ, կերամզիտ» (2013, վերջին երեքը՝ հեռուստասերիալ) և այլ ֆիլմեր:

ՔԵՈՓՍ, **Խուֆու**, Եգիպտոսի փարավոն՝ մ. թ. ա. XXVII դ–ի սկզբին: Կառուցել է Եգիպտոսի ամենաբարձր (146,59 *մ*) բուրգը: *Հերոդոտոսը* Ք–ին բնութագրել է որպես բռնակալ և կեղեքիչ:

ՔԵՉԵԿ Համբարձում Սերաֆիմի (1872–1948), վիրաբույժ, մանկավարժ: Բժշկ. գիտ. դ–ր (1910), պրոֆ. (1925): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1935): ՀԽՍՀ–ում վիրաբուժ. ծառայության հիմնադիրներից: Մշակել է տուբերկուլոզ. գայլախտի լուսաբուժության մեթոդ, զբաղվել ուրոլոգիայի և վիրաբուժության խնդիրներով: Գործն. բժշկության մեջ առաջինն է օգտագործել ֆինզենի լամպը և կիրառել միզապարկադիտումը: ՀԽՍՀ վիրաբույժների գիտ. ընկյան նախագահ (1925–37): Ք–ի անունով է կոչվել Երևանի № 1 կլինիկ. հիվանդանոցի վիրաբուժ. բաժանմունքը:

ՔԵՉԵԿՅԱՆ Ստեփան Ֆեոդորի (1890–1967), իրավաբան: Իրավաբ. գիտ. դ–ր (1940), պրոֆ. (1918): ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1960): Աշխ–ները վերաբերում են պետության և իրավունքի տեսության և քաղ. գիտ–յունների պատմության հարցերին: Ռուս. է թարգմանել Ֆիխտեի երկերից:

ՔԵՉՅԱՆ Առաքել Մարտիրոսի (1885–1955), գրող, բանասեր: Հեղինակ է «Կարմիր դրուագներ հերոսներու կեանքէն, 1915–1918» (հ. 1–3, 1938–40) վիպաշարի, «Ուխտաւորներ հայ ազատագրութեան ճամբուն վրայ» (1935), «Անկումը հարստութեան ճամբուն վրայ» (1946) վեպերի, «Ակն եւ ակնցին, 1020–1915» (1942) աշխ–յան:

ՔԵՉՅԱՆ Բյուզանդ (Նուրհան, 1859–1927), խմբ., հրապարակախոս, տպարանատեր: Կ. Պոլսի «Մասիս», «Արեւելք», «Բիւզանդիոն», «Ռահվիրա» (1862), 1876–77–ին՝ «Մամուլ», 1877–85–ին՝ *«Թէրճեամանը Էֆքեար»* հայատառ թուրք. պարբ–ների գլխ. խմբ.:

ՔԵՉՅԱՆ Օննիկ Զենոբի (1900–1962), դերասան, ռեժ.: Հանդես է եկել 1919–ին Նիկոմեդիայում, ապա՝ Կ. Պոլսում, 1922–ից՝ Բուլղարիայում: Անձնավորել է դրամատիկ. և բնութագր. դերեր (Սուրեն՝ Շիրվանզադեի «Պատվի համար», Աբեղա՝ Լ. Շանթի «Հին աստվածներ», Յագո՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», ևն): Բեմադրել է Շիրվանզադեի «Նամուս», Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար», Լ. Ստոյանովի «Վարպետները» և այլ գործեր:

ՔԵՊԱՊՃՅԱՆ (Քեբաբջյան) Մելքոն Մկրտչի (1880–1949), նկարիչ: Հայրենադարձել է 1947–ին: Ք–ի գեղանկարչ. և գրաֆիկ. խորհրդապաշտ. պատկերներում գերակշռում է Մեծ եղեռնի թեման [«Հայուն արյան ճամփան» (1915, ՀԱՊ), «Վաղ գարուն», «Հայ մայրերի սուգը», «Գաղթականներ» ևն], որոնք աչքի են ընկնում հատակ գծանկարի և նուրբ գունաներանգների համադրությամբ:

ՔԵՊԻՆՈՎ (Քեպինյան) Գրիգոր Հովհաննեսի (1886–1966), քանդ.: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1956): 1921–ից՝ Մոսկվայում: Կերտել է կնոջ՝ Տ. Քեպինովայի (1935), նաև Ա. Խաչատրյանի (1945), Մ. Սարյանի (1949, ՀԱՊ), Ս. Ս. Պրոկոֆևի (1961), Մ. Ալամազյանի (1961, ՀԱՊ) դիմաքանդակները, որոնք աչքի են ընկնում հավաստիությամբ, բնութագրման ճշգրտությամբ, ձևերի արտահայտչականությամբ:

ՔԵՌԻ (Գավաֆյան Արշակ Գրիգորի, 1858–1916), ազգ–ազատագր. շարժման գործիչ: «Պաշտպան հայրենյաց» հայ ազատագր. գաղտնի կազմ–յան անդամ: 1890–ին մասնակցել է Ս. Մ. *Կուկունյանի* արշավանքին, 1904–ին՝ Սասունի ապստամբությանը, 1908–ին՝ Իրան. հեղ–յանը: 1914–ին նշանակվել է 4–րդ կամավոր. ջոկատի հրամ., կռվել է Սարիղամիշի ռազմաճակատում, որտեղ էլ զոհվել է: Նրա մասին ժողգ–ը երգեր է հյուսել:

ՔԵՌՅԱՆ Գարիկ Միշայի (ծ. 1969), պատմաբան: Քաղ. գիտ. դ–ր (2003), պրոֆ. (2007): Աշխ–ները վերաբերում են ժամանակակից միջազգ. հարաբերությունների, քաղ. կուս–յունների պատմության և տեսության հարցերին:

ՔԵՍԱԲ, **Քեսապ** (արաբ.՝ Քասապ), հայկ. գք Սիրիայում՝ Լաթաքիայից 59 *կմ* հս: Միավորում է 11 հայկ. գյուղեր: Ք–ի հայությունը 1890–ական թթ–ից ազգ–գաղ. ու կրթ. բուռն վերելք է ապրել: 1911–ին շրջանում ապրել է 6115 հայ, որոնք 1915–ին տարագրվել են Դեյր էզ–Զոր և Հորդանան: Ազգ. միությունը 1918–22–ին կազմակերպել է շուրջ 2300 վերապրածների տունդարձը:

1947–ի հուլիսին Ք–ից 2407 հայ ներգաղթել է հայրենիք: 1993–ին Ք–ի հայ բնակչության թիվը 1277 էր:

2014–ին Սիրիայում քաղաքաց. պատերազմի ժամանակ՝ մարտի 21–23–ին, իսլամիստ. ուժերը գրավել են Ք–ի շրջանը: 3 ամիս անց սիրիական զորքերն ազատագրել են այն, որտեղ վերահաստատվել է շուրջ 1000 հայ: Ք. ավանում գործում են 3 հայկ. վարժարաններ:

ՔԵՍԱԲԻ ԲԱՐԲԱՌ, հայ–ի «հա» ճյուղի բարբառ: Խոսվում է Անտիոքի (այժմ՝ Սիրիայի տարածքում) Քեսաբ ավանում և շրջակա 11 հայաբնակ գյուղերում: Ունի եռաստիճան (բ>պ, պ>բ, փ) բաղաձայն. համակարգ:

ՔԵՍՈՆ ՍԻԹԻ (Quezon City), ք. Ֆիլիպինների Լուսոն կղզում՝ Մեծ Մանիլա ագլոմերացիայում: 1948–76–ին՝ երկրի պաշտոն. մայրաքաղաքը: Բն.՝ 2,3 մլն (2010): Կոչվել է երկրի 1–ին նախագահ (1935–ից) Մ. Լ. Քեսոնի (1878–1944) անունով:

ՔԵՍՐԱՅ Սիավուշ (1926–1996), պարսիկ բանաստեղծ: Հեղինակ է «Ճիչ» (1958), «Նետաձիգ Արաշը» (1959), «Սիավուշի արյունը» (1963), «Խավարից մինչև լուսաբաց» (1980), «Ամերիկա, Ամերիկա» (1980) ժող–ների:

ՔԵՎԵԴՈ Ի ՎԻԼԼԵԳԱՍ (Quevedo y Villegas) Ֆրանսիսկո (1580–1645), իսպանացի գրող: Հեղինակ է «Դոն Պարլո անունով խաբեբայի կյանքի պատմությունը» (1626) վեպի, «Երազներ և ...» (1627) սոցիալ. քաղ. թեմաներով պամֆլետների շարքի, «Հատուցման ժամ կամ Բանական Ֆորտունա» (հրտ.՝ 1650) նովելների ժող–ի: Հայ. հրատարակվել է «Բուսկոնի կյանքը: Երազներ» (2002) գիրքը:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, 1. *լեզվաբանության* բաժին. ուսումնասիրում է լեզվի քերական. կառուցվածքը, նրա կանոնները: 2. Լեզվի քերական. կառուցվածքը՝ լեզվ. միջոցների ու ձևերի համակարգ: Միավորում է իմաստաբանությունը, բառակազմությունը, ձևաբանությունը և շարահյուսությունը:

ՔԵՐԲԱԲԵՎ, Բերդի Մուրադովիչ (1894–1974), թուրքմեն գրող: Թուրքմ. ԽՍՀ ժող. գրող (1967), ԳԱ ակադ. (1951): Սոց. աշխ. հերոս (1969): Հեղինակ է «Այսոլթանը սպիտակ ոսկու երկրից» (1949) վիպակի, պատմահեղ. թեմայով «Վճռական քայլ»

(գիրք 1–3, 1940–55), «Ներիտդաղ» (1957), «Հրաշքով ծնվածը» (1965) թուրքմեն հեղ. Կ. Աթաբաևի կյանքի մասին վեպի, նաև պոեմների, պիեսների: ԽՍՀՄ (1948, 1951) և Թուրքմենստանի (1970) Պետ. մրց-ներ:

ՔԵՐԶՈՆ (Curzon) Ջորջ Նաթանիել (1859–1925), անգլիացի պետ. գործիչ, դիվանագետ: Մարքիզ: Պահպանողական: Մեծ Բրիտանիայի ԱԳ նախարար՝ 1919–24-ին: 1899–1905-ին՝ Հնդկաստանի փոխարքա: Գործուն դեր է խաղացել հետպատերազմյան միջազգ. խորհրդաժողովներում (Փարիզ, Լոնդոն, Լոզան ևն): Նրա անունով է կոչվում 1919-ին Խորհրդ. Ռուսաստանին Անտանտի առաջարկված խորհրդ-լեհ. սահմանագիծը («Քերզոնի գիծ»): Հայկ. հարցում վարել է երկդիմի քաղ-յուն՝ հայերի և Օսմ. կայսրության ազգ. փոքրամասնությունների հարցերը ծառայեցնելով Մեծ Բրիտանիայի կայսերապետ. ձգտումներին:

ՔԵՐԹՄԵՆՋԱՆ Դավիթ Գրիգորի (ծ. 1952), ճարտ., ճարտ-յան պատմաբան: Ճարտ-յան դ-ր (1994), պրոֆ. (2002): Համահեղինակ է Արմավի ածեցման (1985, Քուվեյթ), Հայաստանի ամերիկ. համալսարանի բիզնես. (2000) կենտրոնների, հեղինակ՝ Այնթապի հուշահամալիրի բարեկարգման (2002), Վիրաժ-Լոջիկ համակարգչ. ընկ-յան մասնաճյուղի շենքի (2003, Երևան), ՀՀ Արարատի մարզի Արևշատ գ-ի Սբ Աստվածածին եկեղեցու (2006) և այլ նախագծերի:

ՔԵՐԻ (Cary) Ջոյս (1888–1957), անգլիացի գրող: Հեղինակ է «Միստեր Ջոնսոն» (1939) վեպի, «Ինքս ինձ զարմանում եմ» (1941), «Ուխտավորի ճանապարհով» (1942) և «Առաջին ձեռքից» (1944), «Մերձավորի նկատմամբ սիրով» (1952), «Աստծուց բացի» (1953) և «Մի՛ սիրիր՝ ես ավելի բարձր եմ» (1954) եռերգությունների, նաև պատմվածքների, էսսեների:

ՔԵՐԾԵՆԵՐ, **բարակներ**, հնագույն ծագման որսորդ. շների ցեղախումբ: Օգտագործում են վայրի գազանների անգեն որսի համար: Ներկայում կա 20 ցեղ: Առավել տարածված են ռուս., հարավռուս., կոկամազ., էստ., գերմ. Ք., անգլ. ֆոքսհաունդը, բիգլը, ֆրանս. բասետը ևն, սրադունչ Ք-ից՝ ռուս. տափաստան., միջինասիական թագինները, կիրգիզ. տայգանները, բակխմուլները ևն:

ՔԵՐՈԲՅԱՆ Կիրիլ Կիրիլի (1915–1976), շին. մեխանիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1955), պրոֆ. (1955): Աշխ-ները վերաբերում են առաձգ. համակարգերի դինամիկայի հարցերին, շին. մեխանիկայի խնդիրների էլ. մոդելավորմանը:

ՔԵՐՈԲՅԱՆ (Խերոբյան) Ֆլորա Արշավիրի (1924–2003), ռենտգենաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1967), պրոֆ. (1969): Աշխ-ները հիմնականում վերաբերում են Յունինգի ուռուցքների ռենտգենախտորոշման, բջջաբանության և ախտաբան. ձևաբանության հարցերին: Ուսումնասիրել և ներդրել է շերտագրության հատուկ մեթոդ: ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան:

ՔԵՐՈԼ (Carroll) Լյուիս (Չառլզ Լաթուիջ Դոջսոն, 1832–1898), անգլիացի գրող, մաթեմատիկոս, տրամաբան: Գրոտեսկային «անիմաստ պոեզիայի» ավանդույթների շարունակողներից: Հեղինակ է «Ալիսան հրաշքների աշխարհում» (1865, հայ.՝ 1971) և «Ալիսը հայելու աշխարհում» (1871, հայ.՝ 1994) հեքիաթների:

ՔԵՐՉԱԽՈՍ (Asperugo), գաղտրիկազգիների ընտանիքի միամյա խոտաբույսերի ցեղ: ՀՀ-ում հայտնի է 1 տեսակ՝ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերում: Դեղաբույս է:

ՔԵՐՏԻՆ (Curtin) Ջոն Ջոզեֆ (1885–1945), Ավստրալիայի 14-րդ վարչապետը՝ 1941–1945-ին:

ՔԵՐ (Kerr) Ջոն (1824–1907), շոտլանդացի ֆիզիկոս: Հայտնաբերել է էլեկտրաօպտիկ. (1875) և մագնիսաօպտիկ. երևույթները, որոնք նրա անունով կոչվել են ***Քերրի էֆեկտ***:

ՔԵՐՐԻ ԲՋԻՋ, ***Քերրի*** էլեկտրաօպտիկ. երևույթի վրա հիմնված սարք, որը 2 բևեռացուցիչների հետ օգտագործվում է որպես օպտիկ. փական: Տարբերվում է աշխ-ի արագագործությամբ (10^{-9}–10^{-12}):

ՔԵՐՐԻ ԷՖԵԿՏ, 1. **Էլեկտրաօպտիկական**, համասեռ էլ. դաշտի ազդեցությամբ երկբեկման երևույթի առաջացումն օպտիկապես իզոտրոպ նյութերում (հեղուկներում և գազերում): Էլ. դաշտի ազդեցությամբ նյութը (հեղուկ կամ գազ) նմանվում է միառանցք բյուրեղի, որի օպտիկ. առանցքն ուղղված է էլ. դաշտի լարվածության ուղղությամբ: 2. **Մագնիսաօպտիկական**, միջավայրի մագնիսացվածության ազդեցությունը լույսի ինտենսիվության ու բևեռացման վրա, որն անդրադարձել է այդ միջավայրի մակերևույթից: Հարթ բևեռացած լույսը, անդրադառնալով մագնիսացված ֆեռոմագնետիկից, դառնում է էլիպսաձև բևեռացված: 3. **Օպտիկական** Ք. է.՝ հայտնաբերել են ուժեղ օպտիկ. դաշտերում (լազերների ի հայտ գալուց հետո): Նման է էլեկտրաօպտիկ. Ք. է-ին:

ՔԸՐՔՔՈՐՅԱՆ Քրքր (Գրիգորյան Գրիգոր Ահարոնի, 1917–2015), ամերիկահայ գործարար, միլիարդատեր (2015-ին՝ 4,0 մլրդ ԱՄՆ դոլար), բարերար, «Տրասինդա Քորփորեյշնի» գործադիր տնօրեն: Հայաստանի Ազգ. հերոս (2004): Կառուցել է Լաս Վեգասի «Ֆլամինգո», «Էմ Ջի Գրանդ» և այլ խոշոր հյուրանոցներ:1968-ից զբաղվել է կինոարտադրությամբ, «Մետրո Գոլդվին Մայեր» (մասնաճյուղերով) և «Յունայթեդ Արտիստս» կինոստուդիաների, «Էմ Ջի Էմ Միրաժ» կորպորացիայի հիմնադիր բաժնետեր, «Քրայսլեր Քորփորեյշնի» բաժնետեր: Սպիտակի երկրաշարժից հետո և շրջափակման տարիներին Հայաստանին ու Արցախին օգնելու նպատակով հիմնադրել է «Լինսի» հիմնադրամը (1989–2011), որի միջոցով ՀՀ-ում ներդրվել է շուրջ 220 մլն ԱՄՆ դոլար:

ՔԹԱՓՈՐԲ, **ռինիտ** (հուն.՝ rinos – քիթ), ***քթի*** լորձաթաղանթի բորբոքման ախտանշան: Վարակիչ Ք. առաջացնում են տարատեսակ մանրէներն ու վիրուսները, զարգացմանը նպաստում են գերսառեցումը, օդի ուժեղ փոշոտվածությունն ու գազացվածությունը: Սուր Ք. ուղեկցվում է լորձահոսքով (ռինորեա), որը կենցաղում կոչվում է հարբուխ:

ՔԹԵՍԻԲԻՈՒՍ, **Քթեզիբիուս** (մ. թ. ա. մոտ 285–222), հույն մեխանիկոս: ***Հերոն*** աշակերտի հետ ստեղծել է մղման հրշեջ պոմպ, լողանալով ջր. ժամացույց, ջր. երգեհոն:

ՔԻԹ, հոտառության օրգան մարդու դեմքի և կենդանիների դնչի վրա: Ք-ի խոռոչում են տեղակայված մարդու և ողնաշարավոր կենդանիների հոտառության օրգանները:

ՔԻԹԿՈՒԿՈՒՊԱԿԱՆՋԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **օտոռինոլարինգոլոգիա**, կլինիկ. բժշկագիտ-յան բաժին. ուսումնասիրում է քթի, կոկորդի, ականջի և հարակից անատոմ. շրջանների հիվանդությունները, մշակում ախտորոշման, բուժման և կանխարգելման մեթոդներ:

ՔԻԹՈՆ (Keaton) Բեստեր (Ջոզեֆ Ֆրենսիս, 1896–1966), ամերիկացի դերասան, կինոռեժ.: Ստեղծել է անշարժ, անխոով մարդու դիմակ, որը «երբեք չի ծիծաղում»: Ֆիլմերի գլխ. թեման մարդու մենությունն է: Ճանաչված են Ք-ի «Երեք դարաշրջան» (1923), «Ծովագնացը» (1924), «Գեներալը» (1926) կատակերգ. ֆիլմերը (գլխ. դերերում՝ Ք.): Ստեղծվել է «Բեստեր Քիթոնի պատմությունը» (1957, ԱՄՆ) մոնտաժ. ֆիլմը: Նկարահանվել է նաև «Այս խելակորույս, խելակորույս, խելակորույս աշխարհը» և այլ կինոնկարներում:

ՔԻԹ-ՉԵՆԵՐ (Kitchener) Հորացիո Հերբերտ (1850–1916), բրիտանացի ֆլդմ. (1909): 1895–98-ին նրա ղեկավարությամբ Սուդանում ճնշվել է Սահդիական ապստամբությունը: 1900–02-ին՝ զորքերի գլխ. հրամ. անգլո-բուր. պատերազմում: 1914–16-ին՝ ռազմ. նախարար:

ՔԻԼՅԱՆ Ադամ Երեմի (1923–2016), թատրոնի և կինոյի ռեժ., նկարիչ-ձևավորող: Աշխատել է Վարշավայի «Երկնային թռչնակներ», «Լյալկա» տիկնիկ. թատրոններում, բեմադրել «Հաղթող երաժիշտները», «Զարթոնք» և այլ ներկայացումներ: Նկարահանել է շուրջ 30 մուլտֆիլմ, հեռուստաֆիլմեր («Տիեզերական վեսթեռն», «Երջանկության մաշիկները» ևն): Լեհաստանի «Ոսկե խաչ», «Ոսկե նշան», «Ուրախություն» շքանշաններ, Պետ. մրց-ներ:

ՔԻՄԵՌ (կենսբ.), օրգանիզմ կամ օրգանիզմի մաս, որը կազմված է ժառանգականորեն տարբեր բջիջներից և հյուսվածքներից: Առաջանում է մուտացիաների, ռեկոմբինացիաների, բջջի կիսման խանգարումների հետևանքով: Ք-ներ կարող են ստանալ նաև արհեստականորեն՝ կենդանիների հյուսվածքների փոխպատվաստման կամ բույսերի պատվաստումների դեպքերում:

ՔԻՄԵՌԻՆԵՐ (Chimaeriformes), **քիմեռայիններ**, ամբողջագլուխների ենթադասի ծով. ձկների կարգ: Երկ.՝ 60 *սմ*–2 *մ*: Հայտնի է մոտ 30 տեսակ՝ տարածված Համաշխ. օվկ-ի շելֆից մինչև մեծ խոր-յուններ: Մի շարք երկրներում Ք. արդյունագործ. ձկներ են:

ՔԻՄԵՐԱ, 1. հրեշ հուն. դից-յան մեջ. ուներ առյուծի գլուխ և պարանոց, այծի մարմին և վիշապի պոչ: ***Բեռիդնա*** և ***Տիփոն*** հրեշների դուստրը: 2. Միջնադար. եվրոպ. արվ-ում երևակայական հրեշի քանդակ: 3. Փխր. իմաստով՝ երևակայություն, անիրագործելի երազանք:

ՔԻՄԻԱ (հնարավոր է՝ հուն. Chemia – Քեմիա, եգիպտոսի հնագույն անվանումներից), գիտ-յուն, որն ուսումնասիրում է նյութերի փոխարկումները, որոնք ուղեկցվում են նրանց բաղադրության և (կամ) կառուցվածքի փոփոխությամբ: Քիմ. շարժընթացները (մետաղների ստացումը հանքաքարից, գործվածքեղենի ներկումը, կաշվի մշակումը ևն) մարդն օգտագործել է դեռևս իր մշակութ. կյանքի սկզբին: III–IV դդ-ում առաջացել է ***ալքիմիան***, որի խնդիրը ոչ ազնիվ մետաղների փոխարկումն էր ազնիվ մետաղների: Վերածնդի դարաշրջանում քիմ. ուսումնասիրություններն առավել լայնորեն օգտագործվել են կիրառ. նպատակներով

(մետաղագործություն, ապակեգործություն, խեցեղենի, ներկերի արտադրություն), ձևավորվել է նաև ալքիմիայի հատուկ բժշկ. ուղղությունը՝ *յատրոքիմիան*: XVII դ–ի 2–րդ կեսին Ռ. *Բոյլը* տվել է «քիմիական տարր» հասկացության 1–ին գիտ. ձևակերպումը: Ք–ի հետագա զարգացումը կապված էր Մ. Վ. *Լոմոնոսովի* և Ա. *Լավուազիեի* ձևակերպած քիմ. ռեակցիաներում նյութի *զանգվածի պահպանման օրենքի* հետ: XIX դ–ի սկզբին Ջ. *Դալթոնը* ստեղծել է ատոմ. տեսությունը, իսկ Ա. *Ավոգադրոն* ներմուծել է «մոլեկուլ» հասկացությունը, որոնք շրջադարձ. դեր են ունեցել Ք–ի զարգացման համար: Ատոմամոլ. կանխատեսումները հաստատվել են 1860–ական թթ–ին, երբ Ա. Մ. *Բուտլերովն* ստեղծել է քիմ. միացությունների կառուցվածքի տեսությունը, իսկ Դ. Ի. *Մենդելեևը* բացահայտել է պարբեր. օրենքը: XIX դ–ի վերջին և XX դ–ի սկզբին Ք–ի կարևորագույն ուղղությունը դարձել էր քիմ. շարժընթացների օրինաչափությունների ուսումնասիրությունը: Ժամանակակից Ք–ի առանձին բնագավառներ՝ ***անօրգանական քիմիա, օրգանական քիմիա, ֆիզիկական քիմիա, վերլուծական քիմիա, պոլիմերների քիմիա***, դարձել են նշանակալիորեն ինքնուրույն գիտ–յուններ: Ք–ի և այլ գիտ–յունների սահմանագծում ծագել են կենսաքիմիան, ագրոքիմիան, երկրաքիմիան: Ք–ի օրենքներով հիմնավորվել են քիմ. տեխնոլոգիան, մետաղագործությունը ևն:

ՔԻՄԻԱ ԲԱՐՁՐ ԷՆԵՐԳԻԱՆԵՐԻ, ուսումնասիրում է այն ռեակցիաների կինետիկան ու մեխանիզմը, որոնք բնութագրվում են արագ, գրգռված, իոնացված մասնիկների էապես անհավասարակշիռ կոնցենտրացիաներով և իրենց ջերմ. էներգիայի ու հաճախ էլեկտրաքիմ. կապերի էներգիայի համեմատությամբ ունեն ավելցուկ. Էներգիա: Ք. բ. է. ներառում է *լազերային քիմիան*, պլազմաքիմիան, ճառագայթ. քիմիան, լուսաքիմիան, քիմ. ռեակցիաների ուսումնասիրությունն արագ ատոմների իոնների կամ մոլ–ների փնջերում, մեխանոքիմիայի և միջուկ. քիմիայի մի շարք հիմնահարցեր:

ՔԻՄԻԱ ԲԱՐՁՐ ՃՆՇՈՒՄՆԵՐԻ, ուսումնասիրում է քիմ. ռեակցիաների թերմոդինամիկան և կինետիկ. քիմիան բարձր ճնշումներում: Քիմ. շարժընթացներում ծառայում է որպես տես. հիմք՝ բարձր և գերբարձր ճնշումների օգտագործման համար: Դրանք են կատալիզը, գերկրիտիկ. ֆլյուիդային տեխնոլոգիաները, նոր նյութերի (այդ թվում՝ պոլիմերներ, ալմաստներ) ստացումը ևն:

ՔԻՄԻԱ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ, ուսումնասիրում է ֆիզ. և քիմ. երևույթները, որոնք տեղի են ունենում ֆազերի սահմանագծին: Սերտորեն կապված է կոլոիդ. քիմիային (պինդ մարմնի մերձմակերևութ. շերտերի միկրոկառուցվածքի, բյուրեղ. և էլեկտրոն. կառուցվածքների ուսումնասիրություններ): Ներառում է հետերոգեն կատալիզը, կիսահաղորդչ. սարքերի, վառելիք. տարրերի, բարձրկարգավորված մոնոշերտերի արատադր–յունը, որոնք օգտագործում են սենսորների, կենսահամատեղելի նյութերի ստեղծման և այլ նպատակներով:

ՔԻՄԻԱ ՊԻՆԴ ՄԱՐՄՆԻ, ուսումնասիրում է այն ռեակցիաները, որոնցում մասնակցում են բյուրեղ. կամ պինդ ամորֆ (ապակենման) 1 կամ մի քանի նյութեր: Այդպիսի ռեակցիաների արագության և նյութերի ելքի վրա ազդում են մասնիկների միջև եղած քիմ. կապերի տեսակը, բյուրեղ. կառուցվածքը, արատների գոյությունը, ռեակցիայի մեջ մտնող մասնիկների դիֆուզիան, ֆազային անցումները ևն: Պինդ մարմնի մասին քիմ. պատկերացումները կիրառում են միկրոէլեկտրոնիկայում, նոր նյութերի սինթեզում (կերմետներ, գերհաղորդիչներ ևն):


ՔԻՄԻԱ ՊՈԼԻՄԵՐՆԵՐԻ, բարձրմոլեկուլային միացությունների քիմիա, քիմիայի հեռանկարային և հաջող զարգացող ճյուղերից: Կազմված է պոլիմերների ֆիզ. քիմիա, կառուցվածք. քիմիա և այլ բաժիններից: Ք. պ–ի զարգացման շնորհիվ ստացվում են նոր նյութեր, որոնք լայնորեն կիրառվում են բժշկության և արդ–յան տարբեր ճյուղերում, կենցաղում և այլուր:

ՔԻՄԻԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ հոսանքի, սարքեր, որոնք արտադրում են էլեկտրաէներգիա՝ էլեկտրողների վրա ընթացող օքսիդացման–վերականգնման (հոսանքաստեղծ) ռեակցիաների հետևանքով: Ք. ա. լինում են միակի գործողության՝ գալվան. տարրեր, բազմակի գործողության՝ կուտակիչներ և էլեկտրողների վրա ռեագենտների անընդհատ մատուցմամբ՝ *վառելիքային տարրեր*: Օգտագործում են էլ., էլեկտրոն. և ռադիոսարքերում, չափիչ գործիքներում, փոխադրամիջոցներում, կենցաղ. տեխնիկայում և այլուր:

ՔԻՄԻԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ, մաքուր քիմ. նյութերի, նրանց խմբերի ու դասերի անունների և դրանք կազմելու կանոնների ամբողջությունը: Ժամանակակից Ք. ա. մշակում են ԻՅՈՒՊԱԿ–ի հանձնաժողովները՝ քիմ. բանաձևերում պարունակվող տեղեկույթի հիման վրա:

ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, միավորում է լեռնաքիմ., հիմն. քիմ., հանք. պարարտանյութերի, պոլիմեր. նյութերի (սինթետիկ կաուչուկ, սինթետիկ խեժեր և պլաստիկ զանգվածներ, քիմ. մանրաթելեր), սինթետիկ ներկերի, կենցաղ. քիմիայի ապրանքների, լաքանկերկ., ռետինաասբեստային, լուսաքիմ., քիմիաղեղագործ. արդ–յունների մի շարք ենթաճյուղեր:

ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՆԱՁԵՎԵՐ, քիմ. տարրերի նշանների օգնությամբ մաքուր նյութի բաղադրությունն արտահայտող բանաձևեր: Տարբերում են էմպիրիկ կամ մոլ. (ցույց է տալիս ատոմների ընդհ. թիվը մոլ–ում), ռացիոնալ (առանձնացվում են ատոմների որոշակի խմբերը, որոնք ընորոշ են միացությունների տվյալ դասին) և կառուցվածք. (ընորոշում են ատոմների դասավորությունը մոլ–ում) Ք. բ.: Էթիլ սպիրտի համար մոլ. բանաձևը՝ C_2H_6O, ռացիոնալը՝ C_2H_5OH, կառուցվածքայինը՝



ՔԻՄԻԱԿԱՆ ԶԵՆՔ, զանգվածային ոչնչացման զենքի տեսակներից, որի գործողությունը հիմնված է մարտ. թունավոր նյութերի կիրառման վրա: Նե–րառում է քիմ. ռազմամթերքը և դրանք տեղ հասցնող միջոցները (ավիացիա, հրթիռներ, հրետանի ևն): Որպես զինված պայքարի միջոց՝ Ք. զ. հայտնվել է ԱՀՊ–ի ժամանակ: 1933–ին Ժնևում ստորագրվել է համաձայնագիր՝ Ք. զ–ի մշակումը, արտադր–յունը, կուտակումը և կիրառությունն արգելելու և ոչնչացնելու վերաբերյալ: 1997–ին ստեղծվել է Ք. զ–ի արգելման կազմ–յուն (կենտրոնը՝ Հաագայում):

ՔԻՄԻԱԿԱՆ ՋՈՐԲԵՐ, հատուկ զորքեր, որոնք նախատեսված են զորքերի պաշտպ–յան ճառագայթ., քիմ. և կենսբ. առավել բարդ ու մասնագիտ. խնդիրներ լուծելու համար: Ք. զ. պահանջում են անձնակազմի հատուկ պատրաստականություն և հատուկ տեխնիկա՝ հրանետ–այրիչ, աերոզոլ. և այլ միջոցներ կիրառելու համար:

ՔԻՄԻԱԿԱՆ ԹԵՐՄՈԴԻՆԱՄԻԿԱ, ֆիզ–քիմիայի բաժին. ուսումնասիրում է քիմ. ռեակցիաները և ֆիզքիմ. փոխարկումները մակրոսկոպիկ համակարգում թերմոդինամիկական հավասարակշռության մասին պատկերացումների հիման վրա: Թ. ք. ներառում է ջերմաքիմիան, քիմ. հավասարակշռության, լուծույթների, ֆազերի բաժանման սահմանի վրա ֆազ. անցումների և շարժընթացների մասին ուսմունքը: Թերմոդինամիկ. հարաբերակցությունները լայնորեն կիրառվում են քիմ. ռեակցիաների արգասիքների առվլգն հնարավոր ելքերի (տրված ջերմաստիճանի և ճնշման ևն), քիմ., մետաղագործ. և արդ–յան այլ ճյուղերի տեխնոլոգ. շարժընացների այլ հարաչափերի որոշման համար:

ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԶԵՐ, գազ. լազեր, որտեղ ակտիվ միջավայրն առաջանում է քիմ. ռեակցիայի արդյունքում: Անընդհատ ռեժիմում Ք. լ–ի հզորությունը հասնում է մի քանի *կՎտ*–ի: Օգտագործում են լազեր. սպեկտրադիտման, իզոտոպների լազեր. բաժանման մեջ և այլուր:

ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱՊ, միջատոմ. փոխազդեցություն, որի արդյունքում ատոմները միանում են իրար՝ առաջացնելով 2 և ավելի ատոմներից բաղկացած կայուն համակարգեր՝ մոլ–ներ, իոններ, ռադիկալներ, բյուրեղներ ևն: Ք. կ. ունի էլեկտրամագնիս. բնույթ, միացող ատոմների միջուկների և էլեկտրոնների կուլոնյան փոխազդեցության արդյունք է: Ք. կ–ի առաջացման ժամանակ տեղի է ունենում միացող ատոմների էլեկտրոն. խտությունների վերաբաշխում: Ըստ վերաբաշխման տեսակի՝ տարբերում են կովալենտ, իոնական, կոորդինացիոն, մետաղ. կապեր: Ըստ տվյալ Ք. կ–ի առաջացմանը մասնակցող էլեկտրոն. զույգերի թվի՝ լինում են պարզ (միակի), կրկնակի, եռակի կապեր, ըստ էլեկտրոն. բաշխման համաչափության՝ σ– և π–կապ, ի ըստ անմիջականորեն փոխազդող ատոմների թվի՝ երկ–, եռ– և բազմակենտրոն:

ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, օրգ. միացությունների մոլ–ի կառուցվածքը՝ ատոմների և քիմ. կապերի դասավորությունը, միջատոմ. փոխազդեցությունների, ինչպես նաև նյութի ֆիզ. հատկությունների ու մոլ–ի կառուցվածքի կապը նկարագրող տեսություն: Ք. կ. տ–յան դրույթներն առաջինը ձևակերպել է Ա. Բուտլերովը, իսկ տեսության ստեղծման գործում մեծ դեր ունեն Ֆ. Ա. Կեկուլեն, Ժ. Ա. Լե Բելը, Ա. Կուպերը, Յա. Վանտ–Հոֆը: Այս տեսությունն էական ազդեցություն է ունեցել տես. և սինթետիկ օրգ. քիմիայի զարգացման գործում:

ՔԻՄԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԺԵՔ, թվապես հավասար է չեզոքացման ռեակցիաներում ջրածնի 1 իոնի (H^+) կամ հիդրօքսիդ իոնի (OH^-), օքսիդավերականգնման ռեակ–

ցիաներում՝ 1 էլեկտրոնի, կոմպլեքսառնչափության մեջ՝ n արժեքականությամբ մետաղի 1/n մասի հետ ռեակցիայի մեջ մտնող նյութի զանգվածին (զանգվածի ատոմ. միավորներով): Օր.՝ $H_2SO_4 + 2NaOH = Na_2SO_4 + 2H_2O$ ռեակցիայում թթվի 1 H^+ իոնին համապատասխանում է NaOH-ի (մոլ. զանգվածը՝ 40) 1 մոլ, 1 OH^- իոնին՝ H_2SO_4-ի (մոլ. զանգվածը՝ 98) ½ մոլ., ուստի NaOH-ի Ք. հ. հավասար է 40, իսկ H_2SO_4-ինը՝ 49, այսինքն՝ 98/2:

ՔԻՄԻԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆ, համակարգի թերմոդինամիկ. հավասարակշռություն, երբ նրա բաղադրիչների միջև տեղի է ունենում քիմ. փոխազդեցություն: Համակարգի վիճակի հարաչափերը Ք. հ-յան դեպքում կախված չեն ժամանակից, այդպիսի համակարգի բաղադրությունը կոչվում է հավասարակշռական:

ՔԻՄԻԱԿԱՆ ՀԱՎԱՍՄԱՐՈՒՄՆԵՐ, քիմ. ռեակցիայի պատկերումը քիմ. բանաձևերի, թվերի և մաթ. նշանների օգնությամբ: Ք. հ-ի ձախ կողմում գրվում են ելանյութերի, աջում՝ վերջնանյութերի քիմ. բանաձևերը: Ք. հ. կազմում են՝ հիմնվելով ***զանգվածի պահպանման օրենքի*** վրա: Բանաձևերի գործակիցները (տարրաչափ.) ընտրում են այնպես, որ ռեակցիային մասնակցող տարրերից յուրաքանչյուրի ատոմների թիվը հավասարման աջ և ձախ կողմերում հավասար լինի:

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, մաքուր նյութեր, որոնք պարունակում են քիմ. կապերով իրար միացած միևնույն (N_2, O_2 ևն) կամ տարբեր (H_2SO_4, KCl ևն) տարրերի ատոմներ: Ք. մ-ի բաղադրությունը հիմնականում ենթարկվում է ***բաղադրության հաստատունության*** և ***բազմապատիկ հարաբերությունների օրենքներին***: Հայտնի են շուրջ 5 մլն Ք. մ.:

ՔԻՄԻԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ, լատ. տառեր, որոնցով նշանակում են քիմ. տարրերը: Առաջարկել է Ի. *Բերցելիուսը* (1814): Յուրաքանչյուր քիմ. տարր նշանակվում է իր լատ. անվան առաջին տառով (մեծատառով): Դրանց կրկնությունների դեպքում ավելացվում է նաև անվան 2-րդ կամ այլ տառ, օր.՝ ածխածինը՝ C, կալցիումը՝ Ca, կոբալտը՝ Co, պղինձը՝ Cu:

ՔԻՄԻԱԿԱՆ ՊՈՏԵՆՑԻԱԼ, բազմաբաղադրիչ և/կամ բազմաֆազ համակարգերում թերմոդինամիկ. հավասարակշռությունը նկարագրելու համար օգտագործվող մեծություն: Սովորաբար համակարգի բաղադրիչի Ք. պ. հաշվում են որպես Գիբսի էներգիայի 1-ին ածանցյալ՝ ըստ այդ բաղադրիչի մասնիկների (կամ մոլերի) թվի՝ հաստատուն ջերմաստիճանի, ճնշման և այլ բաղադրիչների զանգվածների դեպքում: Հավասարակշռված տարասեռ համակարգի յուրաքանչյուր բաղադրիչի Ք. պ. բոլոր ֆազերում հավասար է (ֆազ. հավասարակշռության պայման): Ցանկացած քիմ. ռեակցիայի համար ռեակցիային մասնակցող բոլոր նյութերի Ք. պ-ների և նրանց տարրաչափ. գործակիցների արտադրյալների գումարը հավասար է զրոյի (քիմ. հավասարակշռության պայման):

ՔԻՄԻԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՅԻ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ, քիմ. կինետիկայի հիմն. հասկացություն: Պարզ համասեռ ռեակցիաների համար Ք. n. ա. չափում են փոխազդող նյութի մոլերի թվի փոփոխմամբ (համակարգի հաստատուն ծավալի դեպքում) կամ ելանյութերից, կամ վերջնանյութերից (եթե համակարգի ծավալը փոխվում է) մեկի կոնցենտրացիայի փոփոխմամբ: Բարդ ռեակցիաների համար տարր. փուլերում մասնակցող բոլոր նյութերի առաջացման (քայքայման) արագությունները փոխկապված են:

ՔԻՄԻԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ, ***քիմիական փոխարկումներ***, մեկ կամ մի քանի նյութերի՝ ելանյութերի փոխարկումն այլ բաղադրություն, կառուցվածք և քիմ. հատկություններ ունեցող նյութերի՝ վերջնանյութերի: Ք. n-ի արդյունքում քիմ. տարրերը չեն փոխարկվում, անփոփոխ են մնում նաև նրանց ատոմների թիվը և իզոտոպային բաղադրությունը՝ իրականանում է զանգվածի պահպանման օրենքը: Ք. n. սխեմատիկորեն պատկերում են ***քիմիական հավասարումներով***:

ՔԻՄԻԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ընդգրկում է որակ. և քանակ. վերլուծությունները: Ք. վ-յան մեջ օգտագործում են քիմ. եղանակներ, որոնք հիմնված են լուծույթներում պարունակվող նյութերի որոշման համար կատարվող քիմ. ռեակցիաների վրա, օր.՝ ծանրաչափ. և տիտրաչափ. վերլուծություն, ֆիզքիմ. եղանակներ, որոնց հիմքում ֆիզ. մեծությունների չափումն է: Դրանց փոփոխությունը պայմանավորված է քիմ. ռեակցիաներով (պոտենցաչափություն, ամպերաչափ. տիտրում ևն), ֆիզ. եղանակների հիմքում ընկած է նյութի քիմ. անհատականությամբ պայմանավորված ֆիզ. բնութագրերի փոփոխությունը, օր.՝ սպեկտր. վերլուծությունը, ակտիվացում. վերլուծությունը:

ՔԻՄԻԱԿԱՆ ՏԱՐՐԵՐ, պարզ և բարդ նյութերի պարզագույն բաղադրիչները: Ք. տ-ից յուրաքանչյուրը միջուկի միևնույն լիցքը Z ունեցող ատոմների որոշակի տեսակ է: Ք. տ-ի աղյուսակում 2017-ին հայտնի էին 118 Ք. տ.: Վերջին հայտնաբերվածը՝ Օգանեսոնը, կոչվել է այն հայտնաբերած ֆիզիկոս Յուրի ***Հովհաննիսյանի*** անունով: Tc, Pm, At, Fr, ինչպես նաև Z > 92 տարրերն ստացվել են արհեստականորեն: Երկրակեղևում առավել տարածված են O (49 % ըստ զանգվածի), Si (29,5 %), Al (8,8 %), Fe (4,65 %), Ca (3,38 %), Mg (1,80–2,35 %), տիեզերքում՝ H և He: Ք. տ. կարող են գոյություն ունենալ պարզ նյութերի ձևով (O_2, O_3), որոնց թիվը գերազանցում է 500-ը: Ք. տ-ից յուրաքանչյուրն ունի մի քանի իզոտոպներ (բնական կամ արհեստականորեն ստացված): Քիմ. ռեակցիաներում Ք. տ. մնում են անփոփոխ, իսկ միջուկ. ռեակցիաներում կարող են փոխարկվել մեկը մյուսին:

ՔԻՄԻԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ, գիտ-յուն բնական հումքի, կիսաարտադրանքի և արդ. թափոնների քիմ. վերամշակմամբ լայն սպառման և նյութ. արտադր-յան այլ բնագավառներում օգտագործվող նյութեր ստանալու եղանակների ու միջոցների մասին: Անօրգ. Ք. տ. ընդգրկում է հանք. հումքի վերամշակումը, թթուների, հիմքերի, հանք. պարարտանյութերի ստացումը, օրգ. Ք. տ.՝ նավթի, ածխի, բնական գազի և այլ այրվող հանածոների վերամշակումը, սինթետիկ պոլիմերների, ներկերի, դեղանյութերի ստացումը: Ք. տ-ի տես. հիմքերն են քիմիան, ֆիզիկան, մեխանիկան, մաթ-ը (մասնավորապես՝ մաթ. մոդելավորումը): Ժամանակակից Ք. տ. բնութագրվում է մեծ հզորություններով ագրեգատների ստեղծմամբ, գերբարձր և գերցածր ջերմաստիճանների և ճնշումների կիրառմամբ նոր շարժընթացների յուրացմամբ, բարձրարդյունավետ կատալիզորդների կիրառմամբ, արժեքավոր հատկություններով (գերմաքուր, գերպինդ, հրակայուն, հրահեստ) նյութերի ստեղծմամբ:

ՔԻՄԻԱԿԱՆ ՖԻԶԻԿԱ, գիտ-յուն քիմ. նյութերի կառուցվածքն ու փոխարկումները կառավարող ֆիզ. օրենքների մասին: Ուսումնասիրում է մոլ-ների և պինդ մարմինների էլեկտրոն. կառուցվածքը, մոլ. սպեկտրները, քիմ. ռեակցիաների տարր. գործողությունները, այրման և պայթյունի շարժընթացները և այլ երևույթներ՝ տես. և փորձարար. ֆիզիկայի մեթոդներով (օպտիկ. և ռադիոսպեկտրագրություն, ռենտգեն. կառուցվածք. վերլուծություն, զանգվածասպեկտրաչափություն ևն): Ձևավորվել է 1920-ական թթ-ի վերջ–1930-ական թթ-ի սկզբին՝ կապված ***քվանտային մեխանիկայի*** զարգացման և քիմիայում նրա պատկերացումների օգտագործման հետ: «Ք. ֆ.» եզրույթը ներմուծել է գերմանացի քիմֆիզիկոս Ա. Էյկենը (1864–1930):

ՔԻՄԻԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀՀ ԳԱԱ, կազմակերպվել է 1975-ին ՀԽՍՀ ԳԱ քիմ. ֆիզիկայի լաբորատորիայի (ստեղծվել է 1959-ին) հիմքի վրա՝ Արամ ***Նալբանդյանի*** նախաձեռնությամբ: Ջրաղվում են ազատ ռադիկալների և ատոմների մասնակցությամբ ընթացող բարդ շղթ. ռեակցիաների ու այրման շարժընթացների ուսումնասիրությամբ: Մշակել են ժողտնտ-յան համար մի շարք կարևոր նյութերի (սպիրտներ, գերօքսիդ., էպօքսիդ. միացություններ, օրգ. թթուներ, անօրգ. միացություններ՝ մետաղների կարբիդներ, նիտրիդներ, սիլիցիդներ, հիդրիդներ ևն) ստացման գիտ. հիմունքները: Ք. ֆ. ի-ի տնօրեններ են եղել Արամ Նալբանդյանը, Ադոլֆ Մանթաշյանը, Լևոն *Թամազյանը* (2006-ից):

ՔԻՄՈՏՐԻՊՍԻՆ, մարսող. ֆերմենտ. արտադրվում է ենթաստամոքս. գեղձում, մասնակցում է աղիներում սպիտակուցների ճեղքմանը:

ՔԻՄՔ, մարդու և ողնաշարավոր կենդանիների բերանի խոռոչի վերին պատը: Քարալեզների, միքսինների և կոճիկ. ձկների Ք. կազմվում է կոճիկ. գանգի հիմքով, 2-րդային ծնոտներ ունեցող ոսկրային ձկներինը և ցամաք. ողնաշարավորներինը՝ գանգի հիմքում եղած ոսկրերով: Որոշ սողուններ (կրիաներ, կոկորդիլոսներ ևն) և կաթնասուններ ունեն 2-րդային կարծր Ք., որը բերան. խոռոչը բաժանում է քիթ-ըմպանային անցքերից: Մարդու Ք-ի առաջային 2/3-ը կազմում է կարծր, իսկ հետին՝ 1/3-ը՝ փափուկ Ք.: Փափուկ Ք-ի մկանները մասնակցում են կլմանը:

ՔԻՅԱՐ (Quillard) Պիեռ (1864–1912), ֆրանսիացի լրագրող, բանասեր, բանաստեղծ: Տիրապետել է հայ-ին, դասավանդել է Կ. Պոլսի Կեդրոն. և Մխիթարյան վարժարաններում: Ականատես է եղել արդուլհամիդյան հայկ. ջարդերին, հոդվածներով (1897) ու ելույթներով դատապարտել Թուրքիայի պետ. և Ֆրանսիայի Կառ-յան քաղ-յունը Հայկ. հարցում: 1900–12-ին՝ «*Պրո Արմենիա*» պարբ-ի գլխ. խմբ.: Հեղինակ է «Հայկական հարցը և Եվրոպան» (1896), «Նկատառումներ և փաստաթղթեր ի պաշտպանություն հայերի» (1902) աշխ-ների:

ՔԻՆԳ (King) Էռնեստ Ջոզեֆ (1878–1956), ամերիկ. նավատորմի ծովակալ (1944):


ԵՀՊ-ի ժամանակ՝ ԱՄՆ ՌԾՈՒՀ գլխ. հրամ.: 1942–ից, միաժամանակ՝ ծով. ռազմագործողության պետ (ՌԾՈՒՀ շտաբի պետ):

ՔԻՆԳ Մարտին Լյութեր (1929–1968), ԱՄՆ-ում աֆրոամերիկացիների քաղաքաց. իրավունքների համար պայքարի ղեկ-ներից, ոչ բռնի գործողությունների մարտավարության նախաձեռնողներից: Բողոքական քհն. (1954–ից): Հիմնադրել է (1957) «Քրիստոնեական ղեկավարման հարավային խորհրդաժողով» սևամորթների կազմ-յունը: Խաղաղության Նորելյան մրց. (1964): Սպանել են ռասիստները:

ՔԻՆԳ Ուիլյամ Լայոն Մաքենզի (1874–1950), Կանադայի վարչապետը՝ 1921–30 և 1935–48-ին: 1919–48-ին եղել է Կանադայի Լիբերալ կուս-յան առաջնորդը:

ՔԻՆԳՍՏՈՆ (Kingston), *Ճամայկայի* մայրաքաղաքը (1962-ից), Նվ Նգստ Կարիբյան ծովի ափին: Բն.՝ 937 հզ. (2011): Հիմնադրել են անգլիացիները 1693-ին, 1872-ից՝ Ճամայկայի վարչ. կենտրոնը:

ՔԻՆԻՆ, ալկալոիդ, պարունակվում է քինածառի կեղևում: Օգտագործվում է բժշկության մեջ՝ որպես հակամալարիային միջոց:



ՔԻՆՈԼԻՆ, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 237°C: Իզոքինոլի հետ պարունակվում է քարածխային խեժում: Ք-ի ածանցյալները կիրառում են որպես դեղամիջոցներ, օր.՝ ատոֆանը (ցինխոֆեն), էնտերոսեպտոլը, քինոզոլը: 8-օքսիքինոլինը կիրառվում է *վերլուծական քիմիայում*: Ք-ի միջուկը բազմաթիվ ալկալոիդների, օր.՝ քինինի, կառուցվածք. հատված է:

ՔԻՉ, հնագույն ք. (այժմ՝ Թել էլ-Ուհայմիր ավերակավայրը՝ Իրաքում) մ. թ. ա. XXVIII դ-ից մինչև մ. թ. VII դ-ի կեսերը: Շումեր. պետություններից մեկի կենտրոնը (մ. թ. ա. XXVIII–XXVII դդ.): Ունեցել է պալատ և դամբարան (մ. թ. ա. XXVIII–XXV դդ.), սեպագիր արձանագրությունների արխիվ (մ. թ. ա. III–I հզ-ամյակ) ևն:

ՔԻՉՄԻՉՅԱՆ Ալեքսանդր Հովսեփի (1843–1914), դրամատուրգ: Հեղինակ է «Օրիորդ Բերդյեանց» (բեմ.՝ 1881, հրտ.՝ 1885), «Աչքից ընկած – սրտից հանած», «Նոր կեանքի շեմքին» պիեսների, «Քաղքի ադաթը փոխուիլ է» վոդևիլի, «Նախագիտելիք բուսաբանութեան» (1895) և բնագիտ. այլ աշխ-ների:

ՔԻՇԻՆԵՎ (Kishinev), Մոլդովայի Հանրապետության մայրաքաղաքը: Բն.՝ 663,4 հզ. (արվարձաններով՝ շուրջ 1 մլն, 2010): Տրանսպորտ. հանգույց է, ունի օդանավակայան: Կան մեքենաշին., սննդամի, թեթև, սննդի արդ-յան և այլ ձեռն-ներ: Գործում են բազմաթիվ թատրոններ, թանգարաններ (այդ թվում՝ ռում. գրկ-յան, Ա. Ս. Պուշկինի ևն) և բուհեր (այդ թվում՝ Մոլդ. համալսարանը): Հիմնադրվել է XIV դ-ի կեսերին՝ որպես թաթար. բնակավայր: Քաղաք է 1712-ից: 1812-ին միացվել է Ռուս. կայսրությանը: 1918–40-ին եղել է Ռումինիայի կազմում: 1940-ից Մոլդ. ԽՍՀ մայրաքաղաքն էր: Ճարտ. հուշարձաններից են Սբ Աստվածածնի եկեղեցին («Մազարակիևսկայա», XVIII դ.), Կաթողիկե տաճարը (1830–35), Հաղթակամարը (1840), կանանց գիմնազիայի շենքը (1900) ևն:

Հայերը Ք-ում հաստատվել են XV–XVI դդ-ում: 1795-ին Ք-ում եղել է հայերին պատկանող 6 խանութ, իսկ փողոցներից մեկը կոչվել է Արմյանսկայա (պահպանվել է ցայսօր): XVIII դ-ի կեսին հայերն ունեցել են փայտաշեն մատուռ: 1803–04-ին կառուցվել է հայկ. Սբ Աստվածածին եկեղեցին: 1812-ին Ք-ում հաստատվել է Բեսարաբիայի հայոց թեմի հոգևոր առաջնորդությունը: 1812-ից, երբ Ք. Բեսարաբիայի կազմում անցել է Ռուսաստանին, այն մոտ 1 դար եղել է Բեսարաբիայի հայերի տնտ., մշակութ. և հոգևոր կենտրոնը: 1809-ին Ք-ում ապրել է 560, 1841-ին՝ 700, 1919-ին՝ 1000 հայ: XIX դ-ի սկզբին գործել է ծխ. երկսեռ դպրոց (հետագայում դարձել է միջնակարգ), 1840–60-ական թթ-ին՝ հայազգի Ակիմ Պոպովի տպարանը: 1851–53-ին Ք-ում է ապրել Միքայել *Նալբանդյանը*, Քրիստափոր *Կարա-Մուրզան* կազմակերպել է հայկ. երգչախումբ, հյուրախաղերով հանդես է եկել Պետրոս *Ադամյանը*: Մեծ եղեռնի օրերին ստեղծվել են հանգանակության կոմիտեներ, հայկ. բարեգործ. և այլ կազմ-յուններ: ԱՀՊ-ից հետո Ք-ի հայ ազգ. կյանքը մարել է: 1990-ական թթ-ին սկսվել է Ք-ի հայ համայնքի վերածնունդը: 1992-ին ստեղծվել է հայկ. մշակութ. «Անի» ընկ-ը, 1993-ին վերաբացվել է Սբ Աստվածածին եկեղեցին, բացվել հայկ. կիրակնօրյա դպրոց: Ներկայում Ք-ում ապրում է շուրջ 10 հզ. հայ: 1996-ից հրատարակվում է համայնքի «Նոյեվ կովչեգ» ռուս. թերթը:

ՔԻՈՍ (հուն.՝ Xios), կղզի Էգեյան ծովի արլ-ում: Տարածքը՝ 830 *կմ²*, բարձր.՝ մինչև 1297 *մ*: Հայտնի է հինհուն. և միջնադար. ճարտ. հուշարձաններով: Կազմում է համանուն վարչ. նոմը: Կենտրոնը՝ Քիոս, բն.՝ 23,8 հզ. (2001): Արտահանում է գինի և մրգեր:

ՔԻՍԻՆՋԵՐ (Kussinger) Հենրի (Հայնց) Ալֆրեդ (ծ. 1923), ԱՄՆ պետ. գործիչ, դիվանագետ, քաղաքագետ: 1969–75-ին եղել է Ռ. Նիքսոնի և Գ. Ռ. Ֆորդի աշխատակազմերում՝ ԱՄՆ նախագահի օգնական ազգ. անվտանգության գծով: 1973–77-ին՝ ԱՄՆ պետքարտուղար: «Ճկուն հակազդեցության» ռազմավար. հայեցակարգի հեղինակներից է: 1984–1990-ին՝ ԱՄՆ նախագահին կից միջազգ. գործերով խորհրդի անդամ: 2000-ին՝ Ջ. Ու. Բուշի խորհրդական: Աշխ-ները վերաբերում են միջազգ. հարաբերություններին ու անվտանգության հարցերին: Խաղաղության Նոբելյան մրց. (1973):

ՔԻՐԱՋ (Քիրազյան) Էդմոն (ծ. 1923), ծաղրանկարիչ: 1946-ից՝ Փարիզում: Լույս են տեսել Ք-ի «Գեղեցիկների հուշատետրը» (1959), «Քիրազի կանայք» (1985), «Նաև ես» (2003), «Փոքրիկ դրամաներ» (2005, բոլորը՝ ֆրանս.) ծաղրանկարների ալբոմները և գործերի ժող-ը (1970): Ծաղրանկարներին բնորոշ են սուր դիտողականությունը, նուրբ հումորը, ինքնատիպ վարպետությունը: Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» շքանշան (2011):

ՔԻՐԱՄ ԿԱՋՄՈՂ, XVI–XVII դդ-ի քանդակագործող վարպետ, խաչքար և տապանաքար կազմող: Նրա ստորագրությամբ հայտնի ամենավաղ գործն օրորոցաձև տապանաքար է (1551, ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս գ.), վերջինը (ՀՀ Տավուշի մարզի Բերդ ք.)՝ «Ս. Սարգսի Խաչ» գերեզմանատան 5 խաչքարից 1610 թվակիրը: Նրա գլուխգործոցներն են Վարդենիսի «Դարի գլուխ» գերեզմանատան 2 խաչքարերը, որոնցից մեկը (1596) Մունդ-ում է: Կատարելության է հասցրել Մելիքսեթ Կազմողի «մանրաքանդակ ոճը»:

ՔԻՐՔՔՈՒԿ, ք. Իրաքում, համանուն մուհաֆազի վարչ. կենտրոնը: Բն.՝ 865 հզ. (2010): Նավթի արդյունահանման (հանքավայրի պաշարները՝ ավելի քան 2,5 մլրդ *տ*) և վերամշակման կենտրոն է:

ՔԻՓԼԻՆԳ (Kipling) Ջոզեֆ Ռեդյարդ (1865–1936), անգլիացի գրող: Հեղինակ է «Լույսը մարեց» (1890), «Կիմ» (1901) վեպերի, «Բլուրների անպաճույճ զրույցներ» (1888) նովելների, Մաուգլիի մասին «Ջունգլիների գիրքը» (1894), «Ջունգլիների երկրորդ գիրքը» (1895) պատմվածքների ժող-ների: Ք-ի երկերի հիման վրա նկարահանվել են մուլտֆիլմեր: Հայ. հրատարակվել են «Կոտուկո Էսկիմոս տղան» (1914), «Նաուլեակա» (1915), «Ռիկկի տիկկի տավի» (1936), «Մաուգլի» (1937), «Ողջ մը մեռեալներու մէջ…» (1937), «Արտասովոր հեքիաթներ» (1947), «Պատմվածքներ հենց այնպես» (1974) և այլ գործեր: Նորելյան մրց. (1907):

ՔԼԱՄԻԴՈՄՈՆԱՍ (Chlamydomonas), կանաչ միաբջիջ ջրիմուռների ցեղ: Հայտնի է մոտ 500 տեսակ (հիմնականում՝ փոքր, քաղցրահամ, հատկապես՝ աղտոտված ջրամբարներում), ՀՀ-ում՝ 4: Բազմանում են անսեռ և սեռ. ճանապարհներով: Առաջացնում են ջրի «ծաղկում», կարող են ապրել սառույցի, ձյան մակերևույթին:

ՔԼԱՅԲԵՌՆ (Cliburn) Վան (Հարվի Լավան, 1934–2013), ամերիկացի դաշնակահար: Երկացանկում՝ Ֆ. Շոպենի, Յ. Բրամսի, Կ. Դեբյուսիի, Ս. Վ. Ռախմանինովի և ուր. երկերից: Դաշնակահարների Է. Լևենտրիտտի (1954, Նյու Յորք), Պ. Ի. Չայկովսկու անվ. (1958, Մոսկվա) միջազգ. մրցույթների 1-ին մրց-ներ: 1959-ից Ֆորտ-Ուերտեռում (ԱՄՆ) անցկացվում է դաշնակահարների Ք-ի անվ. միջազգ. մրցույթ:

ՔԼԱՅԴ (Clyde), գետ Մեծ Բրիտանիայում՝ Շոտլանդիայի հվ-ում: Երկ.՝ 176 *կմ*, ավազանը՝ 4,1 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 70 *մ³/վ*: Սկիզբ է առնում Հվ-շոտլանդ. լ-շղթայի հս. լանջերից: Թափվում է Քլայդի Ֆերտ ծոցը:

ՔԼԱՅՆ (Klein) Մելանի (1882–1960), անգլիացի կին հոգեվերլուծաբան (ծագումով՝ հրեա): Ուսումնասիրելով երեխայի կյանքի առաջին տարիները՝ Ք. խաղի մեկնաբանման հիմքի վրա մշակել է մանկ. հոգեվերլուծության տեխնիկա:

ՔԼԱՐԵՆԴՈՆ (Clarendon) Էդուարդ Հայդ (1609–1674), Անգլիայի լորդ-կանցլեր՝ 1660–67-ին, ռոյալիստների առաջնորդներից՝ XVII դ-ի Անգլ. հեղ-յան շրջանում: Հեղ-յան պատմության առաջին պատմաբան-հեղինակը:

ՔԼԱՐԿ (Clark), օպտիկ. ապակի հղկողների և սիրող-աստղագետների ամերիկացի ընտանիք. հայրը՝ **Ալվան Ք.** (1804–1897), որդիները՝ **Ալվան Գրեհեմ Ք.** (1832–1897) և **Ջորջ Ք.** (1827–1891): Օբյեկտիվներ են պատրաստել աշխարհի խոշորագույն՝ Վաշինգտոնի (1873, տրամագիծը՝ 66 *սմ*), Պուլկովոյի (1855, 73 *սմ*), Լիկիայի (1888, 91 *սմ*), Յորքի (1896, 102 *սմ*) աստղադիտարանների աստղադիտակ-ռեֆրակտորների համար, որոնցով հայտնաբերվել են մի քանի կրկնակի աստղեր, *Միրիուսի* արբանյակը ևն:

ՔԼԱՐԿ Արթուր Չառլզ (1917–2008), անգլիացի գրող: 1956-ից՝ Շրի Լանկայում: Հեղինակ է «Կղզիներ երկնքում» (1952), «Մանկության ավարտ» (1953), «Քաղաք և աստղեր» (1956), «Ռելֆինների կղզին» (1960), «Լուսնափոշին» (1961, հայ.՝ 1977, ժող.), «2001 թվականի տիեզերական ոդիսականը» (1968), «Հանդիպում Ռամայի հետ» (1973), «Դրախտի շատրվանները» (1979), «Հեռավոր երկրի երգերը» (1986)

և այլ գիտաֆանտաստիկ. վեպերի, նաև պատմվածքների, վիպակների:

ՔԼԱՐԿ Էլլիս (1917–2010), Տրինիդադ և Տոբագո Հանրապետության 1-ին նախագահը՝ 1976–87-ին, գեն-նահանգապետ (1973–76):

ՔԼԱՐԿ Մարկ Ուեյն (1896–1984), ամերիկացի ռազմ. գործիչ, գեն. (1945): ԵՀՊ-ի ժամանակ՝ 5-րդ բանակի հրամ. Հս. Աֆրիկայում և Իտալիայում, 15-րդ բանակների խմբի հրամ. Իտալիայում: 1952–53-ին՝ ՄՄԱ-ի զորքերի հրամ. Կորեայում:

ՔԼԱՐԿ Ջոն Բեյթս (1847–1938), ամերիկացի տնտեսագետ: Սահման. արտադրողականության տեսության հիմնադիրը, ըստ որի՝ արտադր-յան ընթացքում նկատվում է աշխ-ի ու կապիտալի արտադրողականության նվազում:

ՔԼԱՐԿ Ջոն Դեսմոնդ (1916–2002), անգլիացի հնագետ, մարդաբան, աֆրիկագետ: Հիմն. աշխ-ները վերաբերում են Աֆրիկայի քարի դարի և նրա պատմության ընդհանրացմանը՝ մարդու ծագումից մինչև երկաթի դար: Պեղումներ է կատարել Հվ., Կենտր. և Արլ. Աֆրիկայում, Հնդկաստանում, Չինաստանում:

ՔԼԱՐԿ Սեմյուել (1675–1729), անգլիացի փիլ., անգլիկան աստվածաբան, պալատ. քարոզիչ: Ի. *Նյուտոնի* ընկերն ու աշակերտը: Գ. *Լայբնիցի* հետ նամակագրության մեջ Ք. հակադրել է նրա հայեցակարգերը բացարձակ ժամանակի և բացարձակ տարածության նյուտոնյան հասկացություններին:

ՔԼԵՅՆ (Klein) Լոուրենս Ռոբերտ (1920–2013), ամերիկացի տնտեսագետ: ՌԴԱ արտ. անդամ (2002): Աշխ-ները վերաբերում են տնտ-մաթ. մոդելավորմանը: Նոբելյան մրց. (1980):

ՔԼԻՆԹՈՆ (Clinton) Հիլարի Դայան Ռոդեմ (ծ. 1947), ԱՄՆ պետ. և քաղ. գործիչ: Ու. Ջ. *Քլինթոնի* կինը: Սենատոր՝ Նյու Յորքի նահ-ից՝ 2000–09-ին, ԱՄՆ պետ. քարտուղար՝ 2009–13-ին: Եղել է ԱՄՆ նախագահի թեկնածու (2016, ընտրվել է Դ. Թրամփը):

ՔԼԻՆԹՈՆ Ուիլյամ (Բիլլ) Ջեֆերսոն (ծ. 1946), ԱՄՆ 41-րդ նախագահ՝ 1993–2001-ին՝ Դեմոկրատ. կուս-յունից: Հիլարի *Քլինթոնի* ամուսինը: 1976-ին՝ Արկանզաս նահ-ից ընտրված Սենատի անդամ, 1978–92-ին՝ նահանգապետ: Դեյտոնի համաձայնագրի (1995) կնքման ժամանակ հանդես է եկել որպես միջնորդ, թույլատրել Իրաքի հրթիռ. ռմբակոծությունը (1998-ի դեկտ.), 1999-ի մարտ-հունիսին ԱՄՆ ռազմ. գործողությունների իրականացումը ՆԱՏՕ-ի ուժերի գլխավորությամբ Հարավսլավիայում, ամերիկյան կողմից ՀՀՊ համակարգի սահմանափակման մասին 1972-ի պայմանագրի խախտումը, աջակցել դեպի Արևելք ՆԱՏՕ-ի ընդարձակմանը: 2001-ից՝ իր անվան հիմնադրամի (հիմն.՝ 1997) ղեկ.:

ՔԼԻՎԼԵՆԴ (Cleveland) Սթիվեն Գրովեր (1837–1908), ԱՄՆ 22-րդ (1885–89) և 24-րդ (1893–97) նախագահը՝ Դեմոկրատ. կուս-յունից: Իրականացրել է հովանավորչ. քաղ-յուն, միջազգ. հարցերում եղել համաամերիկականության կողմնակից:

ՔԼԻՎԼԵՆԴ, ք-նվինգստո ԱՄՆ-ի Օհայո նահ-ում՝ Էրի լճի ափին: Բն.՝ 424,5, ագլոմերացիայում՝ շուրջ 3 մլն (2010): Խոշոր ֆինանսաառևտր., մշակութ. կենտրոն է: Հիմնադրվել է 1796-ին:

ՔԼՈՐ (Chlorium – դեղնականաչ), Cl, տարրերի պարբեր. համակարգի VII խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 17, ա. զ.՝ 35,453: Հալոգեն է: Ազատ Ք. բաղկացած է երկատոմանի մոլ-ներից (Cl_2): Սուր հոտով դեղնականաչավուն գազ է, խտ.՝ 3,214 *գ/լմ*^{3}, $t_{հալ.}$ – 101°C, $t_{եռ.}$՝ – 33,97°C, սովոր. ջերմաստիճանում հեշտությամբ հեղուկանում է 0,669 *ՄՊա* ճնշման պայմաններում: Քիմիապես ակտիվ է, օքսիդիչ: Հիմն. միներալներն են հալիտը (քարաղը), սիլվինը, բիշոֆիտը: Ծովի աղը կազմված է նատրիումի, կալիումի, մագնեզիումի և այլ տարրերի քլորիդներից: Կիրառում են Ք. պարունակող օրգ. միացությունների (60–75 %), անօրգ. նյութերի (10–20 %) արտադր-յան, թաղանթանյութի և գործվածքեղենի (5–15 %) սպիտակեցման, սան. կարիքների, ջրի վարակազերծման (քլորացմամբ) համար: Թունավոր է:

ՔԼՈՐԱԿԻԲ, քիմ. նյութ, որն ստացվում է քլորի և հանգած կրի փոխազդեցությունից: Ք. $CaCl(ClO)$, $Ca(OCl)_2$, $CaCl_2$, $Ca(OH)_2$ և բյուրեղաջրի բարդ կոմպլեքս է: Սուր հոտով հատիկավոր սպիտակ փոշի է: Կիրառում են ախտահանումների, գազաեռացման, թաղանթանյութի և գործվածքեղենի սպիտակեցման համար:

ՔԼՈՐԱՄԻՆՆԵՐ, **մոնոքլորամին Բ և մոնոքլորամին S** (առավել կարևորները), $XC_6H_4SO_2N(Na)Cl \cdot 3H_2O$ (X-ը՝ H և CH_3՝ համապատասխանաբար): Անգույն բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 180–185°C և $t_{հալ.}$՝ 175–180°C (քայքայվելով): Սպիտակեցնող են, գազաեռացուցիչ, վարակազերծիչ [համանօրինակ կիրառություն ունեն երկքլորամինները (Բ և S $XC_6H_4SO_2NCl_2$)]:

ՔԼՈՐԱՋՐԱԾԻՆ, HCl, անգույն, սուր հոտով, օդում ծխացող գազ է, $t_{հալ.}$՝ – 114,2°C, $t_{եռ.}$՝ – 85,1°C: Լավ լուծվում է ջրում՝ առաջացնելով *աղաթթու*: Արդ-յան մեջ ստանում են որպես կողմնակի արգասիք՝ օրգ. միացությունների քլորացման ժամանակ, նատրիումի քլորիդի և ծծմբական թթվի փոխազդեցությամբ են: Օգտագործում են աղաթթվի և քլոր պարունակող օրգ. նյութերի, այդ թվում՝ պոլիմերների արտադր-յան մեջ:

ՔԼՈՐԱՋՈՒՐ, քլորի լուծույթը ջրում: Քլորի հետ միաժամանակ պարունակում է աղաթթու և հիպոքլորային թթու: Ուժեղ օքսիդիչ է: Կիրառում են գործվածքեղենը սպիտակեցնելու համար:

ՔԼՈՐԱՏՆԵՐ, քլորական թթվի՝ $HClO_3$-ի աղերը: Բյուրեղներ են, սովոր. պայմաններում՝ կայուն, տաքացնելիս՝ պայթյունավտանգ: Կարևոր են կալիումի Ք. (բերտոլետյան աղ), նատրիումի՝ $NaClO_3$, և մագնեզիումի՝ $Mg(ClO_3)_2$ Ք.: Կիրառում են որպես օքսիդիչներ, հերբիցիդներ և չորացնող նյութեր: Թունավոր են:

ՔԼՈՐԱՅՈՒԽ, 1. օրգ. միացություններում ջրածնի ատոմը քլորի ատոմով փոխանակելու երևույթը, օր.՝ $CH_4 + Cl_2 \rightarrow CH_3Cl +$ + HCl: 2. Գունավոր մետաղագործության մեջ՝ նյութերը քլորի, քլոր պարունակող գազերի կամ մետաղների քլորիդների մթն-ում տաքացնելով քլորիդների փոխարկելու շարժընթացը: 3. Ջրի Ք., խմելու ջրի վարակազերծումը գազ. քլորով, քլորակրով կամ քլորամինով:

ՔԼՈՐԲԵՆԶՈԼ, C_6H_5Cl, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 132°C: Կիրառվում է ֆենոլ, պեստիցիդներ, դեղամիջոցներ ստանալու համար և որպես լուծիչ:

ՔԼՈՐԵԼԱ (Chlorella), **կանաչուկ**, կանաչ միաբջիջ անշարժ ջրիմուռների ցեղ: Հայտնի է 20 տեսակ, ՀՀ-ում՝ 1: Ապրում է քաղցրահամ ջրամբարներում և հողում: Հարուստ է սպիտակուց. միացություններով: Բազմանում է սպորներով:

ՔԼՈՐԵՆՔԻՄ (< *քլոր(ոֆիլ)* և enchyma – լցված, այստեղ՝ հյուսվածք), բույսերի հյուսվածք, որի բջիջները պարունակում են զգալի քանակությամբ լուսասինթետիկ կառուցվածքներ՝ *քլորոպլաստներ*: Պարենքիմի տարատեսակ է:

ՔԼՈՐԻ ՕՔՍԻԴՆԵՐ, քլորի միացությունները թթվածնի հետ. հեմիօքսիդը՝ Cl_2O, դեղնանարնջագույն գազ է, երկօքսիդը՝ ClO_2, կանաչադեղնավուն գազ, եռօքսիդը՝ Cl_2O_6, վառ կարմիր հեղուկ, երկքլորահեպտաօքսիդը՝ Cl_2O_7, անգույն հեղուկ: Ուժեղ օքսիդիչներ են, պայթունավտանգ: ClO_2-ը սպիտակեցնում է թուղթը, թաղանթանյութը, գործվածքները:

ՔԼՈՐԻԴՆԵՐ, քլորի միացություններն ավելի փոքր էլեկտրաբացասականություն ունեցող քիմ. տարրերի հետ: Մետաղների Ք. բյուրեղներ են (աղաթթվի աղերը), ոչ մետաղների Ք.՝ հեղուկներ կամ գազեր:

ՔԼՈՐԻՏՆԵՐ, քլորային թթվի՝ $HClO_2$-ի աղերը: Ջրում լուծելի բյուրեղներ են, պինդ վիճակում տաքացնելիս և հարվածելիս պայթում են: Թթվային պայմաններում օքսիդիչ են: $NaClO_2$-ը կիրառում են գործվածքներ, թաղանթանյութ, թուղթ սպիտակեցնելու համար:

ՔԼՈՐՈՋ ԲՈՒՅՏԵՐԻ, հիվանդություն, երբ խախտվում է *քլորոֆիլի* առաջացումը տերևներում, և նվազում է լուսասինթեզի ակտիվությունը: Առաջանում է ախտածին միկրոօրգանիզմներով՝ հողում երկաթի և այլ միկրոտարրերի անբավարարության, ավելցուկ. խոնավության պայմաններում: Ավելի հաճախ ախտահարում է պտղատու և գեղազարդիչ մշակաբույսերը: Բույսերի տերևները դեղնում են և սպիտակում, հապաղում են նրանց աճն ու զարգացումը:

ՔԼՈՐՈՊԼԱՍՏՆԵՐ (< հուն. chloros – կանաչ և plastos – ձեւված), բույսերի ներբջջ. օրգանոիդներ (պլաստիդներ), որոնցով իրականանում է լուսասինթեզը: Պարունակած քլորոֆիլի շնորհիվ ունեն կանաչ գույն: Հանդիպում են բույսերի վերգետնյա օրգանների տարբեր հյուսվածքների բջիջներում:

ՔԼՈՐՈՊՐԵՆ, 2-քլորբուտադիեն՝ $CH_2=CClCH=CH_2$, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 59,4°C: *Քլորոպրենային կաուչուկներ* ստանալու հումք է:

ՔԼՈՐՈՊՐԵՆԱՅԻՆ ԿԱՈՒՉՈՒԿՆԵՐ, **նաիրիտ, նեոպրեն,** [–CH_2–CCl=CH–CH_2–]$_n$, ստացվում է քլորոպրենի պոլիմերմամբ: Ք. կ-ից ստացված ռետինները մթնոլորտա-, բենզա- և յուղակայուն են: Կիրառվում են փոխակրիչ. ժապավենների, գոտիների, սոսինձների արտադր-յան մեջ:

ՔԼՈՐՈՖԻԼ (< հուն. chloros – կանաչ և phyllon – տերև), բույսերի քլորոպլաստներում պարունակվող կանաչ գունակը: Լուսասինթեզի ընթացքում կլանում է լուս. էներգիան և փոխարկում օրգ. միացությունների քիմ. կապի էներգիայի: Քիմ. կառուցվածքով բարդ ցիկլիկ միացություն է (պորֆիրին), որը պարունակում է Mg-ի ատոմ: Գոյություն ունեն կառուցվածքով նման, բայց կլանման սպեկտրով տարբեր տիպերի Ք-ներ:

ՔԼՈՐՈՖՈՐՄ, **եռքլորմեթան**, $CHCl_3$, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 61,1°C: Լավ լուծիչ է ճարպերի, խեժերի և այլ նյութերի, ինչպես նաև հումք՝ խլադոնների ստացման համար:

ՔԼՈՐՊԻԿՐԻՆ, Cl_3CNO_2, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 113°C: Ունի գրգռիչ և հեղձուցիչ

հատկություն, օդում ոչ տանելի կոնցենտրացիան 0,05 *մգ/դմ*^{3} է՝ 2 *ր* տևողությամբ: ԱՀՊ-ի ժամանակ կիրառվել է որպես թունավոր նյութ: Ծխարար է:

ՔԼՈՒԳ (Klug) Աարոն (ծ. 1926), հրեա կենսաքիմիկոս: Լոնդոնի թագավոր. ընկ-յան նախագահ (1995–2000): Աշխ-ները վերաբերում են նուկլեինաթթուների և նուկլեոպրոտեիդների (ծխախոտի խայտաղետության վիրուս, քրոմատին, ՌՆԹ) ռենտգենակառուցվածք. վերլուծությանը և մանրադիտմանը: Նորելյան մրց. (1982):

ՔԼՈՒՆԻ (Clooney) Ջորջ (ծ. 1961), ամերիկացի դերասան, ռեժ., պրոդյուսեր, հաս. գործիչ: Ճանաչվել է «Շտապ օգնություն», «Սայրամուտից մինչև լուսաբաց» ֆիլմերով, նկարահանվել նաև «Վերադարձ սարսափի դպրոց», «Բեթմենը և Ռոբին», «Պայթյուն», «Օ, որտե՞ղ ես, եղբա՛յր», «Հետնորդները», «Ողջույն, Կեսար», «Միրիանա», «Մայքլ Քլեյթոն» և այլ կինոնկարներում: 2016-ին Երևանում եղել է «Ավրորա» միջազգ. 1-ին մրցանակաբաշխության հանձնախմբի համանախագահը: «Օսկար» մրց. (2006, 2013):

ՔՂԻ, Քեղի,Գեղի, Կողոբերդ, գք, Էրզրումի նինզ-ի համանուն գվո-ի կենտրոնը՝ Արածանիի աջակողմյան վտակ Քղիի ափին: Տուժել է երկրաշարժերից (1415, 1616): Ք-ի հիմն. բնակիչները հայերն էին. 1830-ին՝ 8 հզ., 1915-ին՝ 10 հզ. (ապրել են նաև քրդեր ու թուրքեր): XX դ-ի սկզբին գործել են 1-ական արական և իգական նախակրթարաններ: Եղել է գրչության կենտրոն. հայտնի են Երեմիա Սարկավագի 1464-ին ընդօրինակած մի Մաշտոց և Գանձարան: 1915-ին Ք-ի հայ բնակչությունը տեղահանվել է և կոտորվել Կամախի ձորում: Փրկվածներն ապաստանել են Արլ. Հայաստանում կամ տարագրվել են:

ՔՂԻՄԱՐ, Խլոմար, բերդ *Աղձնիք*-ի Աղձն գվո-ում: Շուրջը եղել է մեծ բնակավայր, որը հիշատակվում է նաև որպես քք: Ք-ով է անցել Դվին–Դամասկոս ճանապարհը: Որպես կարևոր պաշտպ. ամրություն՝ Ք. նշանակալի դեր է խաղացել VIII–IX դդ-ի արաբ-բյուզ. պատերազմների ժամանակ:

ՔՄԵՐԵՐԵՆ, կամբոջերեն, Կամբոջայի պետ. լեզուն: Պատկանում է ավստրոասիական լեզվաընտանիքին: Հնագույն գրավոր հուշարձաններն ավանդվել են VII–XI դդ-ից:

ՔՄԵՐՆԵՐ ԼԵՌՆԱՅԻՆ, ժողդ-ների (կուի, սուի, բանար, սեդանգ են) խումբ Կամբոջայում, Հվ. Վիետնամում, Լաոսում և Թաիլանդում: Ընդհ. թիվը՝ 16 մլն (2008): Խոսում են մոն-կխմեր. խմբի լեզուներով: Հավատացյալները հիմնականում բուդդայական են:

ՔՅԱԹԻԲ ՉԵԼԵԲԻ (թուրք.՝ Kâtip Çelebi, 1609–1657), թուրք գիտնական, պատմագիր, աշխարհագետ, բանաստեղծ: Աշխ-ները վերաբերում են աստվածաբանությանը, իրավագիտ-յանը, քաղ-յանը, գրկ-յանը, աշխարհագրությանը, պատմությանը, մատենագիտ-յանը: Կարևոր նյութեր են պարունակում Հայաստանի XVII դ-ի պատմության, հաս., տնտ. և քաղ. կյանքի վերաբերյալ. արժևորվում են նրանով, որ դրանցում Հայաստանը ներկայացված է որպես հայերի երկիր:

ՔՅԱԹԻՊՅԱՆ Հովհաննես Սարգարի (1821–1882), հաս., քաղ. գործիչ, հրապարակախոս, բժիշկ: Մերժել է Աբդուլ Համիդ II-ի՝ պալատ. բժշկապետ դառնալու առաջարկը՝ ասելով, որ ինքն «աղքատների բժիշկ է և կփափագի միշտ այդպես մնալ»: Աժ երեսփոխան (1867), Կայսեր. բժշկ. ընկ-յան անդամ: Սպանվել է անհայտ հանգամանքներում:

ՔՅԱԼՅԱՆ Գոհար Պետրոսի (ծ. 1961), ձևաբան-անատոմ: Բժշկ. գիտ. դ-ր (1993), պրոֆ. (2003): ԵՊԲՀ ռեկտոր (2006–11): Աշխ-ները վերաբերում են արյան միկրոշրջանառության հունի ձևաբանաֆունկցիոնալ առանձնահատկություններին: Հայաստանի ձևաբանների ընկերակցության փոխնախագահ (1997–ից): ԵՊԲՀ ոսկե մեդալ (2002):

ՔՅԱՆԴԱՐՅԱՆ Կարեն Ալեքսանդրի (1925–2013), սրտաբան, ռենտգենաճառագայթաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1994), պրոֆ. (2001): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2004): Իրինա *Հովակիմյանի* ամուսինը: Երևանի Սրտաբանության և սրտային վիրաբուժության ԳՀԻ տնօրեն (1958–61): Զբաղվել է սրտի բնածին ու ձեռքբերովի արատների, իշեմիկ և զարկերակ. հիվանդությունների, սրտային անբավարարության, ճառագայթ. վնասվածքներիախտորոշման հարցերով:

ՀԽՍՀ ԱՆ գլխ. ճառագայթաբան (1966–68), ռենտգենաբանների, ճառագայթաբանների և ուռուցքաբանների գիտ. ընկ-յան փոխնախագահ (1965–79), ՀՀ ԲԳԱ (1996), Նյու Յորքի ԳԱ (1997), ՀՀ տեխնոլոգ. ակադ-ի (2004) անդամ:

ՔՅԱՓԱՆԱԿՅԱՆ Խաչատուր Գևորգի (ծ. 1968), ծանրորդ: Միջազգ. կարգի ս. վ. (1991): Եվրոպայի չեմպիոն (1993), կրկնակի մրցանակակիր (1994, 1995), աշխարհի ռեկորդակիր (1999):

ՔՅՈՒԼԵՐ (Köhler) Գեորգ (1946–1995), գերմանացի իմունաբան: Մշակել է (Ս. *Միլշտեյնի* հետ) բջջ. հիբրիդների արտադատած մոնոկլոնալ հակամարմինների ստացման կենսատեխնոլոգիան: Նորելյան մրց. (1984, Ն. *Եռնեի* և Ս. Միլշտեյնի հետ):

ՔՅՈԼՆ (Köln), ք. Գերմանիայի Հս. Հռենոս-Վեստֆալիա երկրամասում, Նվ՝նգստ Հռենոս գետի ափին: Բն.՝ 996 հզ., ագլոմերացիայում՝ շուրջ 2 մլն (2008): Խոշոր տրանսպորտ. հանգույց է, ունի օդանավակայան: Առևտրաֆին. կենտրոն է: Գործում են Գեղարվ-ի, Հռոմեա-գերմ., Արևելաասիական արվ-ի և այլ թանգարաններ, բուհեր: Հայտնի է մ. թ. ա. I դ–ից: Ճարտ. հուշարձաններից են ռոման. ոճի եկեղեցիները (X–XIII դդ.), գոթ. տաճարը (XIII–XIX դդ., Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է), բարոկկո ոճի եկեղեցիները (XVII–XVIII դդ.), Ռատուշան (XIII դ.), բնակելի տները (XIII դ.) ևն:

ՔՅՈԼՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Եվրոպայի հնագույն համալսարաններից, հիմնադրվել է 1388-ին Գերմանիայի Քյոլն ք-ում: 1798–1919-ին չի գործել: Ուսանողների թվով 3-րդն է Գերմանիայում: 2016-ին ուներ ավելի քան 45 հզ. ուսանող:

ՔՅՈԼՌԵՅՏԵՐ (Köllreuter) Յոզեֆ Գոտլիբ (1733–1806), գերմանացի բուսաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1766): Բույսերի արհեստ. հիբրիդացման մեթոդի հիմնադիրներից: Փորձարար. մեթոդով ապացուցել է միջատների դերը փոշոտման մեջ:

ՔՅՈՄՈՒՐՃՅԱՆ Երեմիա Մարտիրոսի, **Երեմիա Չելեպի, Երեմիա Դպիր, Երեմիա Բյուզանդացի, Երեմիա Կոնստանդնուպոլսեցի** (1637–1695), պատմագիր, մանկավարժ, տպագրիչ, տրամաբան: 1676-ին Կ. Պոլսում հիմնադրել է տպարան: Հեղինակ է «Գովաբանութիւն տեղեաց տնօրինակաց յԵրուսաղէմ» (1670), «Ստամպօլոյ պատմութիւն» (հ. Ա–Գ, 1913–1939), «Օրագրութիւն» (հրտ.՝ 1939), «Պատմութիւն համառօտ Դշ տարւոյ Օսմանցոց թագաւորացն» (2-րդ հրտ.՝ 1982), «Պատմութիւն հրակիզման Կոնստանդնուպոլսոյ (1660 տարւոյ)» (հրտ.՝ 1991) և պատմ., տոմարագիտ., կրոն. և այլ երկերի, որոնց մեծ մասը չափածո է, «Վիպասանութիւն Յառումը Կրետէ կղզւոյ», «Պատմական բանք իւրոյ ժամանակին» և այլ անտիպ աշխ-ների: Ք-ի «Աշխարհագրութիւն»-ից մեզ են հասել առաջաբանի մի մասը և հայկ. վանքերի տեղագր. քարտեզը: Հեղինակ է նաև ուղերձների, գանձերի, ողբերի, պոեմների, տաղերի, մշակել է ժող. երգեր: Հայ-ից թուրք. է թարգմանել ներսես Շնորհալու «Հավատով խոստովանիմ» աղոթքը, Դավթի սաղմոսները, Հայսմավուրքը և այլ գործեր:

ՔՅՈՄՈՒՐՃՅԱՆ Կոմիտաս Մարտիրոսի (1656–1707), թարգմանիչ: Քհն. (1683): Պաշտոնավարել է Սամաթիայի Սր Գևորգ եկեղեցում: Չափածոյի է վերածել «Գործք առաքելոց»-ը (հրտ.՝ 1704): Ստեփանոս Ավգերյանցը գրել է «...Քէօմիւրճեանց տէր Կոմիտաս քահանայնըն վարքը, վէ՛նահատակութիւնու...» (1798) հայատառ թուրք. գրքույկը: Օսմ. կառ-յան որոշմամբ Ք-ին գլխատել են, 1929-ին Հռոմի Պիոս ԺԱ պապը Ք-ին կարգել է «երանելիների դասին»:

ՔՅՈՆԻԳ (König) Ֆրիդրիխ (1774–1833), գերմանացի գյուտարար: Ստեղծել և արտոնագրել է (1811) գործնականում պիտանի առաջին տպագր. մեքենան (հարթատիպ):

ՔՅՈՊՆ (Köppen) Վլադիմիր Պետրովիչ (1846–1940), ռուս. աշխարհագետ, բուսաբան, կլիմայագետ (ծագումով՝ գերմանացի): 1875-ից՝ Գերմանիայում, 1919-ից՝ Ավստրիայում: Առաջարկել է երկրագնդի կլիմաների դասակարգում: Օդաբան. հետազոտությունների հիմնադիրներից: Աշխ-ները վերաբերում են ընդհ., սինօպտիկ. և ծով. օդերևութաբանությանը:

ՔՅՈՒԼ (Curl) Ռոբերտ (ծ. 1933), ամերիկացի քիմիկոս: Բացահայտել է (1985) ածխածնի նոր ձևափոխության՝ *ֆուլերենների* գոյությունը: Նորելյան մրց. (1996, Ռ. *Սմոլլիի* և Հ. *Քրոթոյի* հետ):

«ՔՅՈՌ-ՕՂԼԻ», հերոս. էպոս, տարածված է Մերձ. Արևելքում և Միջին Ասիայում: Ձևավորվել է XVII դ-ում: Հիմքում ժող. հերոսի կերպարն է, որի նպատակը վրեժ լուծելն է հորը կուրացրած բռնապետներից (այստեղից՝ հերոսի անունը՝ «Ք.»՝ կույրի որդի, կամ «Գյոռօղլի»՝ գերեզմանի որդի): «Ք.»-ու պատումները պայմանականորեն կարելի է բաժանել 2 խմբի՝ 1. արմ. (թուրք., հայկ., վրաց., քրդ., ադրբ.), 2. արլ. (թուրք., ուզբ., ղազախ., տաջիկ.): «Ք.» առաջիններից թարգմանել և մշակել է Ղազարոս *Աղայանը*:

ՔՅՈՍԱՅԱՆ Գարի Սերգեյի (ծ. 1947), ջազ. դաշնակահար, կոմպոզիտոր: 1988–2003-ին՝ ԱՄՆ-ում: Հայկ. առաջին ջազ. տրիոյի (1973) և «Գարի Քյոսայան» ջազ. քառյակի (1990) հիմնադիրը: Հեղինակ է ջազ. կոմպոզիցիաների («Ծիրանի ծառ», «Երևանյան գույներ», «Աստիճայուդ», «Օրորոցային», «Ռոմանս», «Ժամանակ», «Ավե Մարիա» ևն), կինոյի («Լռության սիմֆոնիա», 2000, «Արահետ», 2005, «Լռության ձայն», 2012) և թատրոնի («Մուսա լեռան 40 օրը», 2010) երաժշտության:

ՔՅՈՍԵՅԱՆ Հակոբ Հովհաննեսի (ծ. 1951), հայագետ, աստվածաբան: Բանասիր. գիտ. դ–ր (2010): 1977–ից՝ Մտնդ–ի Մայր ցուցակ հայ. ձեռագրաց գիտ. խմբի ղեկ.: Հեղինակ է «Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության» (1995), «Եկեղեցու հայրեր, վարդապետներ: IV–VIII» (2007) և այլ աշխ–ների, «Հայ եկեղեցու պատմություն» (2005) ուս. ձեռնարկի, «Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության» (համահեղ., 2003) գրքի: Նրա աշխատասիրությամբ հրատարակվել են Վարդան Արևելցու, Անանիա Սանահնեցու երկերի քնն. բնագրերը, Գրիգոր Տաթևացու, Հովհան Ոսկերերանի և ուր. երկերը:

ՔՅՈՓՐՅՈՒԼՅՈՒ (Köprülü) Մեհմեդ Ֆուատ (1890–1966), թուրք բանասեր, հրապարակախոս, պատմաբան: ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1925): Հիմնադրել է թուրք. գրականագիտ–յան եվրոպ. դպրոցը: Հեղինակ է «Թուրքական գրականության պատմություն» (1928): 1950–57–ին՝ Թուրքիայի ԱԳ նախարար:

ՔՅՈՒ ՏԵՆԴ, G–**ռիկետսիոզ**, մարդու և կենդանիների սուր վարակիչ հիվանդություն. հարուցիչները ***ռիկետսիաներն*** են: Ախտանշանները՝ գլխացավեր, թուլություն, անքնություն, մկանացավեր, օջախ. թոքաբորբ: Կենդանիների Ք. տ. ընթանում է անախտանշան: Մարդը վարակվում է կենդանիներից:

ՔՅՈՒՉՈՒԿ–ԿԱՅՆԱՐՋԻ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ 1774, հաշտության պայմանագիր Ռուս. և Օսմ. կայսրությունների միջև, որով ավարտվել է Ռուսաստանի համար հաղթ.՝ 1768–74–ի ռուս–թուրք. պատերազմը: Կնքվել է Քյուչուկ–Կայնարջի գ–ում՝ Սիլիստրիի մերձակայքում (այժմ՝ Սիլիստրա՝ Բուլղարիայում): Ք–Կ. հ–ով չեղյալ են հայտարարվել ռուս–թուրք. նախկին բոլոր պայմանագրերը՝ բացի Կ. Պոլսի հաշտությունից (1700): Ճանաչվել է ***Ղրիմի խանության*** անկախությունը:

ՔՅՈՒՐԱԿ, գետ Լ–ՂՀ–ում, Կուրի աջ վտակը: Սկիզբը է առնում Մեծավի լ–շղթայի հս. լանջերից՝ 3100 *մ* բարձր–ից: Երկ.՝ 126 *կմ*, ավազանը՝ 2080 *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 2,85 *մ³/վ*, հոսքը՝ 90 մլն *մ³* (Գետաշեն գ.): Կուր է թափվում ծ. մ–ից 18 *մ* բարձր–յան վրա: Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով:

ՔՅՈՒՐԴԻԱՆ Ալիսա Վահազնի (ծ. 1943), կինոօպերատոր: ՀՀ արվ. վաստ. գործիչ (2010): 1969–ից աշխատել է մուլտկինոյում (առաջին կին օպերատորը): Նկարահանել է «Ջութակը ջունգլիներում» (1969), «Մկների ժողովը» (ըստ Ա. Խնկոյանի, 1978), «Որսորդներ» (1977), «Քաջ Նազար» (1980, երկուսն էլ՝ ըստ Հ. Թումանյանի), «Հայելի» (1982), «Մեղմակոճակ» (1989), «Ընտրություններ» (1994), «Պանդոկ» (2002) և այլ մուլտֆիլմեր:

ՔՅՈՒՐԴՅԱՆ Հարություն Գառնիկի (1901–1976), պատմաբան, բանասեր, արվեստաբան, հրտ.: Պլովդիվում (Բուլղարիա) հրատարակել է «Ապագայ», «Շանթ» պարբ–ները: 1923–ից՝ ԱՄՆ–ում: Հեղինակ է «Թորոս Տարօնեցի: Կեանքն ու իր տաղերը» (1943), «Գորգը հայոց մօտ» (1947), «Երիզայ եւ Եկեղեաց գաւառ» (հ. 1, 1953), «Իսրայէլ Օրի: Պատմաքննական ուսումնասիրութիւն» (1960), «Յակոբ կաթողիկոս Ջուղայեցի» (1965), «Նիւթեր հայ վաճառականութեան պատմութեան» (ա. թ.) և պատմ., ազգագր., բանասիր. այլ աշխ–ների:

ՎնտՄՄ–ին է կտակել իր գր. ֆոնդը, հայկ. միջնադար. ձեռագրերի (300) և ազգագր. իրերի հավաքածուն: ՎնտՄՄ Սբ Ղազարի կաճառի պատվ. անդամ (1975):

ՔՅՈՒՐՈՒԿ–ԴԱՐԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1854, տեղի է ունեցել 1853–56–ի ***Ղրիմի պատերազմի*** ժամանակ՝ Արմ. Հայաստանի Քյուրուկդարա գ–ի (այժմ՝ Քուրուդերե՝ Կարսի մարզում) մոտ, հուլիսի 24–ին (օգոստ. 5)՝ թուրք. գլխ. ուժերի (հրամ.՝ Մուստաֆա Զարիֆ փաշա) և ռուս. զորաջոկատի միջև (հրամ.՝ գեն. Վասիլ *Բեհրությով*):

Ք–Դ. ճ–ում ռուս. զորքի հաղթանակից հետո թուրք. բանակն Այսրկովկասում իբրև գործուն ռազմ. ուժ դադարել է գոյություն ունենալուց:

ՔՅՈՒՐ–ՔՅՈՒԼԱՆ Լևոն Սերովբեի (1872–1924), նկարիչ: Հեղինակ է «Գինով կինը», «Հյուսող հայ կինը», «Կիլիկեցի լեռնականը», «Հայ օջախը» և այլ գործերի: «Քարավանից դուրս մնացած փոքրիկ հայուհին», «Աշեցի կինը» և այլ պատկերներ Ք. գաղտնի նկարել է Մեծ եղեռնի ճանապարհին: Նրա «Բարդին ծովափին» նկարը ՀԱՊ–ում է: Փարիզի համաշխ. ցուցահանդեսի արծաթե մեդալ (1905):

ՔՅՈՒՐ–ՔՄԱՆ Կարո Արայի (ծ. 1947), մշակութաբան, կերպարվեստագետ: Մետաղադրամների և կերպարվ–ի գործերի փորձագետ: Ստամբուլում 1978–ին բացել է օսմ. դրամանիշների 1–ին ցուցահանդեսը (Ջունեթ Գյոքչերի հետ), 1991–ին՝ օսմ. չափ ու կշռի գործիքների ցուցահանդեսը: Անգլ. և թուրք. հրատարակել է «Ալանիայի մետաղադրամները» (1981), «Օսմանյան արծաթե կնիքները» (1996, 2010), «XIV դ. Էգեականի բեյությունների մետաղադրամները» (1998), «Օսմանյան կայսրության հայ նկարիչները» (հ. 1–2, 2004), «Կավի և կրակի մոգական ուժը» (2005) աշխ–ները:

ՔՅՈՒՐ–ՔՅՈՒԼԱՆ Ալբերտ Հայրիկի (1941–2006), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1993), պրոֆ. (2002): Հեղինակ է «1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմը» (2000), «Հայ–ռուսական առևտրատնտեսական կապերը 18–րդ դարի առաջին քառորդին» (2005) և այլ աշխ–ների:

ՔՅՈՒՐ–ՔՅՈՒԼԱՆ Ռուզան Գուրգենի (1930–2002), քանդ.: Ստեփան ***Քյուրքյանի*** կինը: 1960–ական թթ–ից գործերում համադրել է քանդ–յան և ճարտ–յան տարրեր (Կոմիտասի անվ. զրոսայգու պանթեոնի գլխ. հուշապատը, 1965, «Ընտանիք», 1968, «Վերածնունդ», 1972, «Վարպետ Օհանը», 1972, «Կոմիտաս», վերջին երկուսը՝ դիմաքանդակ, «1988», կոմպոզիցիա, 1988):

ՔՅՈՒՐ–ՔՅՈՒԼԱՆ Ստեփան Հայկի (1929–2004), ճարտ.: ՀՀ վաստ. ճարտ. (1976): Ռուզան ***Քյուրքյանի*** ամուսինը: Հեղինակ է Երևանում՝ Կամեր. երաժշտության տան (1977), մետրոպոլիտենի «Երիտասարդական» կայարանի (1981), «Այգորիթմ» ԳՀ կենտրոնի (1985), Սբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու (2001), նաև «Վարդան Մամիկոնյան» ձիարձանի (1975), ծովակալ Իսակովի (1988), Հովհաննես Այվազովսկու (2003) և այլ հուշարձանների ճարտ. մասերի, Դիլիջանում՝ Երևաննախագիծ ինստ–ի հանգստյան տան (1963) և այլ նախագծերի:

«Տարվա լավագույն նախագիծ» միջազգ. ստուգատեսի Մեծ (1995), ՀՀ Պետ. (2001) մրց–ներ, ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան, «Մխիթար Հերացի», «Անանիա Շիրակացի» մեդալներ (երեքն էլ՝ 1993):

ՔՅՈՒՐ–ՔՅՈՒԼԱՆ Վաղարշակ Մկրտչի (1905–1978), կաթնագործ: Գեղ. գիտ. դ–ր (1970): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): Աշխ–ները վերաբերում են աղի պինդ պանիրների ստացման, կովի և ոչխարի կաթի բաղադրության, հատկությունների, տեխնոլոգ. ցուցանիշների բարելավման խնդիրներին:

ՔՆԱԽՈՏ (Pulsatilla), **զարկաչ**, գորտնուկազգիների (հրանունկազգիներ) ընտանիքի բազմամյա կոճղարմատավոր խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 40 (50) տեսակ, ՀՀ–ում՝ 1 (ալբ. Ք.)՝ գրեթե բոլոր մարզերում: Պտուղը պարունակում է սապոնիններ, անեմոնին: Դեղազարդիչ է:

ՔՆԱԽՏ, աֆրիկական տրիպանոսոմոզ, ինվազիոն հիվանդություն Արևադարձ. Աֆրիկայում: Ախտանշանները՝ տենդ, քնկոտություն: Հարուցիչները ***տրիպանոսոմաներն*** են. փոխանցվում են ցեցե ճանճի խայթոցով:

ՔՆԱՅԻՆ ԶԱՐԿԵՐԱԿՆԵՐ, զույգ արյունատար անոթներ՝ տեղակայված պարանոցի 2 կողմերում՝ շնչափողի և կերակրափողի երկայնությամբ: Արյուն է մատակարարում գլխի ու պարանոցի բոլոր հյուսվածքներին ու օրգաններին: Ք. զ–ի սեղմումը հանգեցնում է գիտակցության կորստի (այստեղից՝ անվանումը): Ք. զ–ի լայնացած մասը կոչվում է **զարկերակածոց**:

ՔՆԱՐ (լատ.՝ Lyra), երկնքի հս. կիսագնդի ոչ մեծ համաստեղություն՝ Վիշապ, Հերկուլես, Աղվես և Կարապ համաստեղությունների միջև: Ք–ի 4 պայծառ աստղերի փոխդասավորությունը հիշեցնում է զուգահեռագիծ, որի գագաթներից մեկում է համաստեղության ամենապայծառ աստղը՝ ***Վեգան***: ՀՀ տարածքից լավ երևում է հատկապես հուլիս–օգոստ–ին:

ՔՆԱՐ, 1. լար. կսմթթ. երաժշտ. գործիք՝ փայտե տափակ իրանով և կաշվե կամ փայտե մեմբրանով: Իրանի 2 կողմերում կորաբեկ եղջյուրների վրա ամրացված է լարերի (նախ՝ 4, ապա՝ մինչև 11) մի ծայրը պահող տախտակիկը: Նվագել են ձախ ձեռքով: Հին և միջնադար. Հայաստանում երբեմն նույնացվել է ջնարի, տավիղի, սաղմոսարանի և այլ գործիքների հետ (նաև ինքնուրույն գործիք): 2. Երգ. բանաստեղծությունների կամ նոտագրված երգերի ժող. (Ա. Սեդրակյանի «Քնար մշեցվոց և վանեցվոց», 1874, Կոմիտասի «Հայ քնար», 1907, ևն):

«ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ», առաջին հայկ. երաժշտ. ընկ–ը Կ. Պոլսում (1861–63), հիմնադիր՝ Գաբրիել ***Երանյան***: Նպաստել է ազգ. ինքնագիտակցության զորացմանը, ժողտ–ի հաս–քաղ., գեղագիտ. դաստիարակությանը: Հրատարակել է համանուն երաժշտ. հանդես:

«ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ», երաժշտ. հանդես (1861–63, Կ. Պոլիս): Նույնանուն երաժշտ. ընկ–յան պաշտոն. հրտ–յուն: Խմբ.՝ Գաբրիել Երանյան (Տիգրան Չուխաճյանի և Նիկողայոս Թաշճյանի համագործակցությամբ):

ՔՆԱՐԱՀԱՎԵՐ (Menuridae), ճնճղուկանմանների կարգի թռչունների ընտանիք: Սարմնի երկ.՝ 75–130 *սմ*: Պոչերի պոչի 2 փետուրները քնարաձև կորացած են (այստեղից՝ անվանումը): Հայտնի է 2 տեսակ՝ Մեծ Ք. և Ալբերտի Ք. (անհետացող տեսակ է): Ապրում են Հվ–արլ. Ավստրալիայում, կլիմայավարժեցվել են Թասմանիա կղզում: Հայտնի են թռչունների

և այլ կենդանիների ձայները նմանակելու հատկությամբ:

ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ, **լիրիկա** (< հուն. lyra – քնար, որով ուղեկցվել է բանաստեղծության, երգի կատարումը), գեղ. գրկ–յան սեռերից: Ք. անհատ. (սուբյեկտիվ) է, արտահայտվում է առավելապես չափածոյով, և նրա մեջ հանդես եկող կերպարը՝ քնար. հերոսը, կարող է համընկնել կամ տարբերվել բանաստեղծի անհատականությունից: Ք–յան մեջ ընդգրկվում են մի շարք բանաստեղծ. ժանրեր՝ եղերգություն, ներբող, էպիգրամ, ոռմանս, սոնետ ևն:

ՔՆԱՐԻԿ (Բաբայան Մարգարիտ Գերասիմի, 1880–1907/08), դերասանուհի: 1901–ից խաղացել է Բաքվի հայկ. թատերախմբում: 1904–05–ին հայ թատրոնում առաջինն է մարմնավորել Մարգարիտի (Շիրվանզադեի «Պատվի համար») և Ռուբայայի (Ա. Յուժին–Սումբատովի «Դավաճանություն») դերերը, թարգմանել և բեմադրել է Ա. Պ. Չեխովի «Հայր» (1905, խաղացել Նինայի դերը): Այլ դերերից են Էլիզը (Մոլիերի «Ագահը»), Դեզդեմոնան, Օֆելյան (Վ. Շեքսպիրի «Օթելլո, «Համլետ») ևն:

ՔՆԱՓՈՒԹՅՈՒՆ (ֆիզիոլոգ.), վիճակ, երբ դանդաղում են կենսընթացները (հատկապես՝նյութափոխանակությունը): Պարբերաբար ունենում են որոշ կենդանիներ (կրծողներ, չղջիկներ ևն), որը թեթևացնում է սեզոն. անբարենպաստ պայմանների զգացողությունները: Ք. կարող է լինել ամառ. և ձմեռ.:

ՔՆՁՄՆՁՈՒԿ (Thalictrum), **գունդատ**, գորտնուկազգիների (հրանունկազգիներ) ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 250 տեսակ, ՀՀ–ում՝ 6՝ գրեթե բոլոր մարզերում: Դեղաբույս է, ունի միզամուղ հատկություն: Թունավոր է, մեղրատու, որոշ տեսակներ՝ գեղազարդիչ:

«ՔՆՆԻԿՈՆ» («**Քննական**», «**Մեծ քննիկոն**»), հայ աշխարհիկ առաջին գիտ. դասագիրքը: Կազմել է ***Անանիա Շիրակացին*** Անաստաս Ա Ակոռեցի կաթողիկոսի (661–667) պատվերով: Բաղկացած էր նեռածությունից, ***«Յոթ ազատ արվեստներ»***–ից, բժշկությանը, տոմարագիտ–յանը վերաբերող նյութերից, մատենագիտ. քաղվածքներից: Կաթողիկոսի, ապա և Անանիա Շիրակացու մահվանից հետո դեռևս չկիրառված դասագիրքը կաթողիկոսարանն արգելել է: Մոտ 400 տարի անց ***Գրիգոր Մագիստրոս Պահլավունին*** «Ք.»–ով դասավանդել է Սանահինի ու Բջնիի իր ճեմարաններում: Պահպանվել են աշակերտների ընդօրինակած «Ք.»–ի որոշ բաժիններ, 1980–ական թթ–ին վերականգնվել են թվաբանության և երկրչափյան բաժինները:

ՔՈԲԱՅՐԱՎԱՆՔ, ճարտ. համալիր ՀՀ Լոռու մարզում՝ Քոբեր երկթող. կայարանից արմ.՝ Դեբեդ գետի ձորալանջին: Հագույն Մարիամաշեն միանավ եկեղեցին (1171) կառուցել է Կյուրիկե Բ–ի դուստրը՝ Մարիամը: Կիսավեր գլխ. եկեղեցին (XII դ–ի վերջ–XIII դ–ի սկիզբ) միանավ թաղածածկ դահլիճ է (պահպանվել են խորանը, հս., արմ., արլ. պատերը): Վանքի հս–ում 2–րդ թաղածածկ դահլիճ եկեղեցին է (XIII դ.), կենտրոնում՝ սեղանատունը, հվ–արլում՝ ստորգետնյա դամբարանով միանավ եկեղեցին («Չիթախանց վանք»), հս–ում՝ «Գյուղատեղի» հուշարձանները (եկեղեցի, մատուռներ, խաչքարեր):

ՔՈԲՈՒԼԱՁԵ Սերգեյ Սոլոմոնի (1909–1978), վրացի գրաֆիկ, բեմանկարիչ: ՎԽՍՀ ժող. նկարիչ (1958): ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի թղթ. անդամ (1958): Շ. Ռուսթավելու «Ընձենավորը» (1935–37) պոեմի պատկերազարդումներում մարմնավորել է հերոսա–ռոմանտիկ. ուժեղ բնավորություններ: ԽՍՀՄ Պետ. մրց. (1947, 1948):

ՔՈՆ–ՏԱՆՈՒՋԻ (Cohen–Tannoudji) Կլոդ (ծ. 1933), ֆրանսիացի ֆիզիկոս: Առաջարկել է լազեր. ճառագայթմամբ ատոմների սառեցման և կանգառի նոր մեխանիզմ: Աշխատակիցների հետ հելիումի ատոմները սառեցրել է (1995) մինչև ռեկորդային ցածր ջերմաստիճաններ՝ $0{,}18\cdot10^{-6}$ K, փոքրացնելով դրանց արագությունը մինչև 2 *սմ/վ*: Նոբելյան մրց. (1997, Ս. *Չուի* և Ու. *Ֆիլիպսի* հետ):

ՔՈՊԱՆՅԱՆ Միքայել Խաչիկի (1927–1999), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ–ր (1972), պրոֆ. (1978): ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1986, թղթ. անդամ՝ 1977–ից): 1983–87–ին՝ ՀԿԿ կենտկոմի տնտեսագիտ–յան բաժնի վարիչ, 1987–99–ին՝ ՀՀ ԳԱԱ տնտեսագիտ–յան ինստ–ի (1999–ից՝ Ք–ի անվ.) տնօրեն, 1985–99–ին՝ ՀՀ Աժ պատգմ., որտեղ դարձել է ահաբեկչության զոհ: Աշխ–ները վերաբերում են նյութ. շահերի և նյութ. շահագրգռության տնտ. օրենքների, հաս–յան զարգացման գործում հոգևոր արտադր–յան ու մտավոր գործունեության դերի մեծացման միտումների բացահայտման, շուկայական տնտ–յան հիմնահարցերին: ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2000, հետմահու):

ՔՈՊԱՆՋԱՆ Հայկ Սարգսի (ծ. 1945), քաղաքագետ, քաղ. և պետ. գործիչ: ՀՀ բանակի գեն–լեյտ. (2016, գեն–մայոր՝ 2005–ից): Քաղ. գիտ. դ–ր (1992), պրոֆ. (1995): Ունի արտակարգ դեսպանորդի և լիազոր նախարարի դիվանագիտ. կարգ: 1994–98–ին՝ ***«Հայկական բանակ»*** հանդեսի հիմնադիր–խմբ., 2006–ից՝ ՀՀ ՊՆ Ազգ. ռազմավար. հետախուզությունների ինստ–ի պետ: Աշխ–ները վերաբերում են ռազմ. և ԱԱ քաղաքագիտ–յանը, Արցախյան հիմնահարցի կարգավորմանը, [«Հայկական երկրաշարժը (կոնֆլիկտաբանական ուրվագծեր)», 1992, հոդվածների ժող., «Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները...», հայ., անգլ., ռուս., 2008, «Հակամարտության էթնոքաղաքագիտություն...», 2010, ևն]: ՌԴ Ռազմ. ԳԱ անդամ (1996):

ԽՍՀՄ, ՀՀ, Աֆղանստանի և ԱՄՆ մի շարք շքանշաններ ու մեդալներ:

ՔՈՊԱՆՋՅԱՆ Նիկոլայ Գարեգինի (1928–2013), նկարիչ, արվեստաբան: Հեղինակ է բնանկարների («Խաղողաքաղ», 1957, «Ծաղկած ծիրանենի», 1999, «Արագած. աշուն, 2000, շարք), նատյուրմորտների («Մուգ կարմիր վարդեր», 2000–ից, շարք), նաև «Գույնը Հայաստանի վաղ միջնադարյան գեղանկարչությունում» (ռուս., 1978), «Էջմիածնի Ավետարանը» (հայ., ֆրանս., ռուս., 2000), «Ծաղրութի Ավետարանը. 974 թ.» (հայ., ռուս., անգլ., 2006) գրքերի:

ՔՈՊԱՆՋՅԱՆ Ռաֆայել Արտյոմի (ծ. 1942), դերասան: ՀՀ ժող. արտիստ (2003): 1970–ից՝ ԵԴԹ դերասան (Քլեոն՝ Գ. Գորինի «Մռռանալ Հերոստրատին», Կլավդիոս՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», Օուզ բեյ՝ Պ. Զեյթունցյանի «Մեծ «Լռություն»): Խաղացել է հեռուստաթատրոնում (Ի. Շտոկի «Սատանայի ջրաղացը» ևն), նկարահանվել կինոյում («Տղամարդիկ», 1972, «Ձայն բարբառոյ...», 1991, երկուսն էլ՝ Հայֆիլմ, «Կոմսուհի դը Մոնսորո», 1996, «Սերը կույր է», 1997, երկուսն էլ՝ Մոսֆիլմ, ևն):

ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1–ին աստիճանի շքանշան (2017), «Մովսես Խորենացի» (2003), Մ՚Ն ոսկե (2002) մեդալներ:

ՔՈԼԱՏԱԿԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, VII դ–ի ճարտ. հուշարձան ՀՀ Գեղարքունիքի մարզի (Սիսիանի շրջան) Արծվանիստ գ–ի մոտակայքում: Հոիփսիմեատիպ կառույց է: Քանդված են գմբեթն ու ծածկի թաղերը: Ներսից և դրսից սվաղված է, ավանդատները ձգված են հվ–հս, 4 խորաններն ունեն 3–ական լուսամուտ, ճակատները՝ զույգ հայկ. խորշեր:

ՔՈԼԴՈՒԵԼԼ (Caldwell) Էրսքին (1903–1987), ամերիկացի գրող: Հեղինակ է «Ջեննի» (1961, հայ.՝ 1973) և այլ վեպերի, «Սոսկվան կրակի տակ» (1942), «Խուլ Հաբավ...» (1968) և այլ հրապարակախոս., փաստագր. երկերի, «Ամերիկյան հողը» (1931) նովելների ժող–ի և այլ գործերի: Հայ. հրատարակվել է «Տաք գետը» (1962) պատմվածքների ժող–ը:

ՔՈԼԵՋ (անգլ.՝ college), ուս. հաստատության տեսակ: Առաջին Ք–ները հիմնադրվել են XIII դ–ի սկզբին Անգլիայում՝ քառամյա, վճարովի: Լինում են 3 հիմն. տիպերի՝ 1. բարձրագույն դպրոցի մակարդակի, 2. միջնակարգ և բարձրագույն ուս. հաստատությունների միջև, 3. միջնակարգ դպրոցի մակարդակին համապատասխանող և 16 տարեկանից բարձր սովորողների համար: Ք–ի ֆրանս. նմանակները կոլեժներն են, որոնք բացվել են միջին դարերում համալսարաններին կից՝ Ֆրանսիայում, Բելգիայի ֆրանսախոս կանտոններում, այնուհետև՝ Ֆրանսիայի գաղութներում և այլուր:

ՀՀ անկախացումից հետո նախկին միջնակարգ մասնագիտ. հաստատությունները հիմնականում վերածվել են Ք–ի, բացվել են նորերը, նաև տարբեր բուհերին կից՝ որպես բարձրագույն կրթության առաջին աստիճան:

ՔՈԼԻՆԶ (Collins) Մայքլ (1890–1922), Իռլանդիայի շինֆեյներների կուս–յան առաջնորդներից: 1921–ին ստորագրել է անգլո–իռլանդ. պայմանագիր, որով Իռլանդիայի մեծ մասին տրվել է դոմինիոնի կարգավիճակ: 1922–ին՝ այսպես կոչված Իռլանդիայի Ազատ Պետության վարչապետ:

ՔՈԼԻՆԶ Մայքլ (ծ. 1930), ԱՄՆ աստղագնաց: ՌՕՈՒ գնդ.: Թռել է «Ջեմինի–10» (1966–ի հուլիս) և Լուսնի շուրջը՝ «Ապոլոն–11» (1969–ի հուլիս) տիեզերանավերով: ԱՄՆ Կոնգրեսի ոսկե մեդալ (2011):

ՔՈԼԻՆԶ Ուիլյամ Ուիլքի (1824–1889), անգլիացի գրող: Ժամանակակից դեդեկտիվ գրկ–յան հիմնադիրներից: Հեղինակ է «Շերմակազգեստ կինը» (1860), «Լուսնաքար» (1868, հայ.՝ 1985) վեպերի, համահեղ. (Չ. Դիքենսի հետ)՝ «Երկու անբան ենթավարպետների ծույլ ճամփորդությունը» (1857), «Փակուղում» (1867) և այլ վիպակների:

ՔՈԼՈՋՅԱՆ Արմեն Բաբկենի (ծ. 1946), նկարիչ, խեցեգործ: Բաբկեն ***Քոլոջյանի*** որդին: Հեղինակ է պլակատների («Ո՛չ նեյտրոնային ռումբին», 1980, «Մարտի 8»,

1982, ևն), դեկորատիվ կոմպոզիցիաների («Քաղաք», «Պատվանդաններ», երկուսն էլ՝ 1986, «Դիմակ», 1995, շամոտ, ջնարակ ևն), ներքին հարդարումների (Երևանի «Բազալտ» գործարան, 1983, պաննոներ) և այլ գործերի:

ՔՈԼՈՋՅԱՆ Բարկեն Ադամի (1909–1994), նկարիչ: Արմեն *Քոլոզյանի* հայրը: ՀՀ արվ. վաստ. գործիչ (1961): Հեղինակ է բնանկարների («Վաղ գարուն», 1946, «Սաղմոսավանք», 1974), նատյուրմորտների («Վարդագույն նատյուրմորտ», 1968), դիմանկարների («Մտազբաղ աղջիկը», 1965, «Գայանե Քոլոզյան», 1968) ևն:

ՔՈԼՈՋՅԱՆ Գևորգ Աղաբեկի (1917–1944), Դիմադրության շարժման մասնակից: Եղել է ֆաշիստ. համակենտրոնացման ճամբարում, որտեղից փախել է և միացել Իտալիայում գործող «Գուիդո Բոսկալյա» պարտիզան. բրիգադին: Զոհվել է մարտում: Իտալիայի Կառ–յան «Մարտական քաջության համար» մեդալ (1966, հետմահու):

ՔՈԼՈՋՅԱՆ Հովհաննես, **Քոլոզ վարժապետ** (1792–1879), հայագետ, պատմաբան, մանկավարժ: Վանի մեծահարուստների աջակցությամբ բացել է ծխ. դպրոցներ, գրել «Ժամանակագրութիւն. Վանի վերջին երկու դարերու պատմութիւնը» գրաբար չափածո ծավալուն երկը, նաև աշխ–ներ, որոնք պահվում են Երուսաղեմի, Փարիզի Նուբարյան, Երևանի մատեն–ներում:

ՔՈՄՓԹՈՆ (Compton) Արթուր Հոլլի (1892–1962), ամերիկացի ֆիզիկոս: Հայտնագործել և բացատրել է հետագայում իր անունով կոչված՝ *Քոմփթոնի էֆեկտը* և Քոմփթոնի հակադարձ էֆեկտը: Հայտնաբերել է ռենտգեն. ճառագայթների լրիվ ներքին անդրադարձման երևույթը: Հայտնագործել է լայնութեն. էֆեկտը՝ տիեզ. ճառագայթներում: Ամերիկ. ատոմ. ռումբի ստեղծման մասնակիցներից: Նոբելյան մրց. (1927):

ՔՈՄՓԹՈՆԻ ԱԼԻՔԻ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆ, մեծություն, որն ունի երկ–յան չափողականություն և ցույց է տալիս ռելյատիվիստ. քվանտ. էֆեկտների դրսևորման տիրույթը: Անվանումը կապված է այն փաստի հետ, որ նրանով արտահայտվում է էլեկտրամագնիս. ճառագայթման ալիքի երկ–յան փոփոխությունը՝ *Քոմփթոնի էֆեկտի* դեպքում: m զանգվածով մասնիկի Ք. ա. ե.՝ $\lambda_0 = \hbar/mc$, որտեղ ħ–ը Պլանկի հաստատունն է, c–ն՝ լույսի արագությունը: Էլեկտրոնի $\lambda_0 \approx 3{,}86 \cdot 10^{-11}$ *սմ*, պրոտոնի $\lambda_0 = 2{,}10 \cdot 10^{-14}$ *սմ*:

ՔՈՄՓԹՈՆԻ ԷՖԵԿՏ, էլեկտրամագնիս. ճառագայթման փոքր երկ–յան ալիքների (ռենտգեն. և գամմա–ճառագայթման) առաձգ. ցրումն ազատ էլեկտրոններից ուղեկցվում է ալիքի λ երկ–յան մեծացմամբ: Հայտնագործել է Ա. *Քոմփթոնը* 1922–ին: Ք. է. հակասում է դաս. տեսությանը, որի համաձայն՝ այդպիսի ցրման դեպքում λ–ն չպետք է փոխվի: Ք. է–ով հաստատվել է էլեկտրամագնիս. ճառագայթման որպես ֆոտոնների հոսքի մասին քվանտ. պատկերացումների ճշտությունը, և այդ ցրումը կարող է դիտարկվել որպես 2 մասնիկների՝ ֆոտոնի և էլեկտրոնի առաձգ. բախում, որի դեպքում ֆոտոնն իր էներգիայի (և իմպուլսի) մի մասը փոխանցում է էլեկտրոնին, որի հետևանքով ֆոտոնի հաճախությունը փոքրանում է, իսկ ալիքի λ երկ–յունը՝ մեծանում:

ՔՈՆԵՔԹԻՔՈՒԹ (Connecticut), 1. գետ ԱՄՆ–ում: Երկ.՝ 552 *կմ*, ավազանը՝ 29 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 606 *մ*^{3}/*վ*: Սահանքավոր է, ջրթող ջրանցքներով նավարկելի է ծով. նավերի համար մինչև *Հարթֆորդ* ք–ը, իսկ գետայինների համար՝ մինչև Հոլիոք ք–ը: 2. Նահգ ԱՄՆ–ի հս–արլ–ում: Տարածքը՝ 14,3 հզ. *կմ*^{2}: Բն.՝ 3,6 մլն (2011): Վարչ. կենտրոնը՝ Հարթֆորդ:

ՔՈՆՐԱԴ (Conrad) Չառլզ (1930–1999), ամերիկացի աստղագնաց: ՌԾՈՒ 1–ին կարգի կապիտան: Թռել է «Ջեմինի–5» (1965–ի օգոստ.), «Ջեմինի–11» (1966–ի սեպտ.), «Ապոլոն–12» տիեզերանավերով՝ Լուսնի վրա վայրէջքով (1969–ի նոյեմբ.), «Ապոլոն» տիեզերանավով և «Սքայլըբ» ուղեծրակայանով (1973–ի մայիս–հունիս):

ՔՈՉՅԱՆ Լուսիկ (Լյուսյա) Գևորգի (1921–1984), երգչուհի: ՀԽՍՀ ժող. արտիստ (1961): 1938–61–ին՝ Հայկ. ժող. երգի–պարի անսամբլի, 1961–84–ին՝ Հայֆիլհարմոնիայի մենակատար: Առավել ճանաչվել է «Ինգոյոլ», «Մանկալ», «Լուսնակ գիշեր», «Ձաղացս պատիկ–պատիկ» ժող., Ջիվանու, Շերամի, Հավասու, Աշոտի, Շահենի և ուր. երգերի կատարումներով:

ՔՈՉԱՐ (Քոչարյան) Անդրանիկ Մելիքի (1919–1984), լուսանկարիչ: Հայրենադարձել է Ալեքսանդրիայից 1947–ին: 1962–ին Երևանում հիմնադրել է լուսանկարչ. ակումբ: Սև–սպիտակ լուսանկարչությամբ նրա դիմանկարները («Վ. Փափազյան», «Վ. Սարոյան», «Մ. Սարյան», «Գ. Մահարի» ևն) աչքի են ընկնում ծավալների նուրբ անցումներով:

Որդին՝ **Վահան Ք.** (ծ. 1949), գեղանկարիչ, լուսանկարիչ: 2003 և 2005–ին հրատարակել է օրացույցներ (XIX դ–ի վերջ–XX դ–ի սկզբի հայ լուսանկարիչների գործերով), «Հայ լուսանկարիչներ» (2007) ալբոմը:

ՔՈՉԱՐ Գևորգ Բարսեղի (1901–1973), ճարտ.: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1961), վաստ. ճարտ. (1968): ԽՍՀՄ շին–յան և ճարտ–յան ակադ–ի թղթ. անդամ (1957): Համահեղինակ է Երևանում՝ Կառուցողների ակումբի (1928–29, այժմ՝ Ռուս. թատրոնի և Օլիմպ. կոմիտեի շենքերը), Երջրէկի բնակելի տան («Շախմատաձև», 1930–32), «Մոսկվա» կինոթատրոնի (1935–37), Զեյթունի ուսանող. հանրակացարանների (1961–64), հեղինակ՝ Վանաձորում՝ «Երևան» կինոթատրոնի (1935), Դիլիջանում՝ հանգստյան տան (1936), Նորիլսկում՝ օդանավակայանի (1946), Կապի տան (1946) և այլ նախագծերի: Կազմել է Նորիլսկ (1939–54) և Դուդինկա (1945–54) ք–ների գլխ. հատակագծերը (երկուսն էլ՝ Միքայել Մազմանյանի հետ, որտեղ նրանք աքսորված էին):

ՔՈՉԱՐ (Քոչարյան) Երվանդ Սիմոնի (1899–1979), նկարիչ, քանդ.: ՀԽՍՀ (1965), ԽՍՀՄ (1976) ժող. նկարիչ: 1936–ից՝ Երևանում: Լավագույն գործերից են «Ջվաձև նատյուրմորտ», «Ընպանակով կինը» (երկուսն էլ՝ 1920), «Ղազարոսի հարությունը» (1923), «Ընտանիք–սեռունդներ» (1925), «Պտուղներով հուրին» (1926), «Ինքնանկար» (1936), «Ա. Մովսիսյանի դիմանկարը» (1936), Շ. Ռուսթավելու արձանը, «Ոսկան Երևանցի» (1946) գրաֆիկ. երկը, «Զվարթնոցի արծիվը» (1955) մոնումենտալ ուղենշան–կոթողը, «Սասունցի Դավիթ» (1959), «Վարդան Մամիկոնյան» (1975) ձիարձանները, «Դոն Կիխոտ» (1951) թեմատիկ կոմպոզիցիան, «Պատերազմի արհավիրքը» (1962) երփնագիրը ևն: Մշակել է արվ–ի նոր ուղղություն՝ «նկարչություն տարածության մեջ» (1926): Մոմաներկի գյուտի համար Ք–ին տրվել է հեղինակային վկայագիր (1948): Այդ տեխնիկայով են կատարված «Աղջկա դիմանկարը» (1945) և այլ գործեր: Ձևավորել է ներկայացումներ (Ա. Ս. Պուշկինի «Քարե հյուր», 1937, Կ. Գոլդոնիի «Բամբասանք և սեր», 1941, երկուսն էլ՝ Գ. Սունդուկյանի թատրոն, Ի. Կալմանի «Կրկեսի իշխանուհին», 1947, ԵԵԿՄ, ևն), նաև «Սասունցի Դավիթ» (1939) էպոսը: Հեղինակ է «Ես և Դուք» (2007) ժող–ի: 1984–ին Երևանում բացվել է Ք–ի թանգարանը: ՀԽՍՀ Պետ. մրց. (1967):

ՔՈՉԱՐ Հրաչյա (Գաբրիելյան Հրաչյա Քոչարի, 1910–1965), գրող, հրապարակախոս, խմբ.: Մերի *Քոչարի* հայրը: 1934–ին՝ «Ռյա թազա», 1946–51–ին՝ «Սովետական գրականություն», 1954–ին՝ «Ոզնի» պարբ–ների խմբ.: Հեղինակ է «Սրբազան ուխտ» (1946), «Բարեկամություն» (1950) պատմվածքների ու վիպակների ժող–ների, «Մեծ տան զավակները» (հ. 1, 2, 1952, 1959) վեպի, «Վահան Վարդյան» (1934), «Օգսեն Վասպուրի ճանապարհորդությունը» (1937) վիպակների: «Սպիտակ գիրքը» (1965) վիպակների ժող–ում առանձնանում են «Նահապետ» (կինոնկար՝ 1977), «Կարոտ» (կինոնկար՝ 1991) վիպակները, որտեղ պատկերել է Մեծ եղեռնի սարսափներն ապրած, ծննդավայրը կորցրած մարդկանց ճակատագրերը: ՀԽՍՀ Պետ. մրց. (1967):

ՔՈՉԱՐ Մերի Հրաչյայի (1936–1994), բանասեր, թուրքագետ, արաբագետ: Պատմ. գիտ. դ–ր (1991), պրոֆ. (1992): Հրաչյա *Քոչարի* դուստրը: Հեղինակ է «Հայ–թուրքական հասարակական–քաղաքական հարաբերությունները և հայկական հարցը XIX դարի վերջին և XX դ–ի սկզբին» (1988) մենագրության, «Ժամանակակից թուրք հեղինակները Հայաստանի և հայկական հարցի մասին» (համահեղ., 1977), «Թուրքական տարրերը պոլսահայերի լեզվում» (1981, բոլորը՝ ռուս.) աշխ–ների:

ՔՈՉԱՐԻ, տղամարդկանց հայկ. ժող. խմբապար: Կատարում են կիսաշրջանով կամ ուղիղ գծով դասավորությամբ՝ թևերն իրար սեղմած, գլուխները՝ բարձր, քայլերը՝ խրոխտ, կտրուկ՝ մեծ ծնկածալերով ու ծունկկոտրուկներով: Տեսակները՝ ըստ տեղավայրի (Ապարանի, Ալաշկերտի, Մուշի ևն) և պարաձևի (մեկտակ, երկտակ, երեքտակ ևն): Բաղկացած է չափավոր և արագ մասերից: Երաժշտ. չափը՝ 2/4, 4/4, 8/4:

Ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ–ի ոչ նյութ. արժեքների ժառանգության ցանկում (2017):

ՔՈՉԱՐՅԱՆ (Հարությունյան) Անահիտ Ամատունու (ծ. 1955), դերասանուհի: ՀՀ ժող. արտիստ (2015): 1974–ից՝ Էնինականի դրամատիկ., 2002–ից, միաժամանակ՝ Երևանի «Միեր Մկրտչյան» արտիստ. թատրոնների դերասանուհի (Վալյա՝ Ա. Ն. Արբուզովի «Իրկուտսկյան պատմություն», Լավինիա՝ Վ. Շեքսպիրի «Տիտոս Անդրոնիկոս», Թեոֆանո՝ Լ. Շանթի «Կայսրը», ևն): Նկարահանվել է «Սպիտակ ափեր», «Տխուր փողոցի լուսաբացը», «Ուրախ ավտոբուս», «Խաչագողի հիշատակարանը», «Անծանոթը», «Ուրիշի հոգին» (վերջին երկուսը՝ հեռուստասերիալ) և այլ ֆիլմերում:

ՀՀ Պետ. մրց. (2002):

ՔՈՉԱՐՅԱՆ Արամ Կարապետի (1903–1977), կոմպոզիտոր, երաժշտագետ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1960): 1931–33-ին (բռնադատված) աշխատել է Լեռնային Ալթայի ԻՄ-ում, որտեղ ձայնագրել է ալթայցիների (օյրոթներ) երգեր, կազմել համակարգված ժող.: 1934-ին ԵՊԿ-ում հիմնադրել է Ռ. Մելիքյանի անվ. երաժշտագիտահետազոտ. կաբինետ և հայ երաժշտության պատմության ամբիոն: Ձայնագրել է «Սասունցի Դավիթ» էպոսի երաժշտ. ասքեր, աշուղ. սիրավեպեր, հայկ. ժող. և գուսան., քրդ. երգեր (շուրջ 2000 նմուշ): Հեղինակ է «Հայ ժողովրդական երաժշտություն» (ռուս., 1939), «Հայաստանի հարվածային և փողային գործիքները» (1965), «Հայկական գուսանական երգեր» (1976) աշխ-ների, «Տերն ու ծառան» օպերայի (ըստ Հ. Թումանյանի, 1970), «Կանտատ խաղաղության, բարեկամության և աշխատանքի» (1955), նաև ժող. և գուսան. երգերի մշակումների:

ՔՈՉԱՐՅԱՆ Արմենակ Եզեկի (1913–1986), երկրաբան: Երկրբ–հնքբ. գիտ. դ–ր (1970), պրոֆ. (1971): ՀԽՍՀ վաստ. երկրաբան (1967): 1964–67 և 1975–86-ին՝ ՀԽՍՀ ԳԱ երկրբ. գիտ–յունների ինստ–ի փոխտնօրեն, 1967–71-ին՝ տնօրեն: Աշխ-ները վերաբերում են ՀՀ մետաղ. օգտ. հանածոների հանքավայրերի ուսումնասիրությանը:

ՔՈՉԱՐՅԱՆ Գուրգեն Ավետի (1893–1972), աշխարհագետ: Աշխարհագր. գիտ. դ–ր (1965), պրոֆ. (1930): Զբաղվել է Հայաստանի և Ադրբեջանի տնտեսաաշխարհագր. հետազոտություններով, քարտեզագրությամբ: 1925-ին ՀԽՍՀ պետպլանում ղեկավարել է շրջանացման հանձնաժողովը: 1926-ին հաստատվել է նրա ներկայացրած շրջանացման սխեման:

ՔՈՉԱՐՅԱՆ Ժիրայր Արամի (ծ. 1955), հաս–քաղ. գործիչ, քարտեզագետ, բանաստեր: 1985-ին Բեռլինում հիմնադրել է (Թ. Հոֆմանի հետ) Հայկ. տեղեկատվության և փաստագրության կենտրոն: Հեղինակ է «Հայաստանի և հայերի բնակեցրած տարածքներն ըստ քաղաքական–պատմական ազդակների՝ սկսած Բեռլինի վեհաժողովից (1878)» (1989), «Հայոց ցեղասպանությունը 1915–1917 թվականներին» (2004, երկուսն էլ՝ գերմ.) և այլ մենագրությունների:

ՔՈՉԱՐՅԱՆ Լևոն Արմենակի (1943–2004), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1993): 1984–2004-ին՝ ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառ. խնդիրների ինստ–ի փոխտնօրեն: Աշխ-ները վերաբերում են պինդ մարմնի ֆիզիկային, ձայնագիտ–յանը, ձայնաֆիզիկային, ցածր էներգիաների միջուկ. ֆիզիկային: Աշակել է պինդ մարմինների ալիքի երկ–յան ճառագայթների հարաչափերի չափման գերզգայուն մեթոդներ և արդյունավետ կառավարման սարքեր:

ՔՈՉԱՐՅԱՆ Կառլեն Սուրենի (ծ. 1949), կանաչապատման, լանդշաֆտ. դիզայնի և գեղազարդիչ այգեգործության մասնագետ: Գեղտ. գիտ. դ–ր (2000), պրոֆ. (2002): Աշխ-ները վերաբերում են կանաչապատման էկոլոգաանտառագիտ–յան խնդիրներին:

Սեսկվայի Կ. Ա. Տիմիրյազևի անվ. գղտ. (2002), Էկոլոգիայի և բնապահպանության միջազգ. (2004) ակադ–ների, ՌԲՆԳԱ (2003) անդամ:

ՔՈՉԱՐՅԱՆ Կարեն Նորայրի (ծ. 1943), ռադիոֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1993): ՌԳԱ ակադ. (1996): ՀՀ ԳԱԱ արտ. անդամ (2006): Նորայր *Քոչարյանի* որդին: 1997-ից՝ ԱՄՆ-ում: Թաֆթսի համալսարանի պրոֆ.: Աշխ-ները վերաբերում են տես. և կիրառ. մագնիսականության, *մմ*-ային ալիքների ռադիոֆիզիկայի, ալիքատար. օպտիկայի միկրոալիք. սարքաշինության հարցերին:

ՔՈՉԱՐՅԱՆ Մուսայել Տիգրանի (1920–1996), փիլ.: Փիլ. գիտ. դ–ր (1981), պրոֆ. (1982): Աշխ-ները վերաբերում են XVIII դ–ի ֆրանսիացի լուսավորիչների փիլ. հայացքներին: ՀՄՊ 1-ին և 2–րդ աստիճանների, «Պատվո նշան» շքանշաններ, ՌԳԱ Ս. Ի. Վավիլովի անվ. ոսկե մեդալ (1991):

ՔՈՉԱՐՅԱՆ Նորայր Մարգարի (1906–1967), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1954), պրոֆ. (1957): ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1956): ՀԽՍՀ վաստ. գործիչ (1967): Կարեն *Քոչարյանի* հայրը: 1944–49-ին՝ Երևանի ֆիզիկայի ինստ–ի փոխտնօրեն:

Աշխ-ները վերաբերում են 1000 և 325 *մ* բարձր–յան վրա տիեզ. ճառագայթների բաղադրության, էներգիաների և զանգվածների սպեկտրների, բարձր էներգիայի մասնիկների և ատոմ. միջուկների փոխազդեցության հետազոտմանը:

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1965):

ՔՈՉԱՐՅԱՆ Ռոբերտ Սեդրակի (ծ. 1954), ՀՀ 2–րդ նախագահը՝ 1998–2008-ին: Արցախի հերոս (1999): 1992–94-ին՝ ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ, 1992–94-ին՝ ԼՂՀ վարչապետ, 1996–98-ին՝ ԼՂՀ 1-ին նախագահ, 1997–98-ին՝ ՀՀ վարչապետ: Ք-ի օրոք է տեղի ունեցել հոկտ. 7-ի ահաբեկչությունը ՀՀ ԱԺ-ում (1999):

ՄԱԿ-ի ամբիոնից բարձրացրել է Հայոց ցեղասպանության միջազգ. ճանաչման հարցը: Ք-ի օրոք հրավիրվել են Հայրենիք–Սփյուռք համաժողովներ (1999, 2001), կազմակերպվել են համահայկ. խաղեր (1999, 2001): «Միտեմա» ԲՖԿ (ՌԴ) անկախ տնօրեն (2009-ից): Արցախի «Ոսկե արծիվ» (1999), «Գրիգոր Լուսավորիչ», Ֆրանսիայի «Պատվո լեգեոն», Վրաստանի «Մեծ խաչ» և այլ շքանշաններ:

ՔՈՉԱՐՅԱՆ Սասուն Տիգրանի (1935–2006), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դ–ր (1986), պրոֆ. (1992): Աշխ-ները վերաբերում են ամիններ և չորրորդային ամոնիումային միացությունների քիմ. փոխարկումներին, ամոնիումային աղերի ներմոլ. և միջմոլ. C– և N–ալկիլմանը, հալոգենացման և ապահիդրոհալոգենացման ռեակցիաների ուսումնասիրմանը:

ՌԲՆԳԱ անդամ (1998):

ՔՈՉԱՐՅԱՆ Սարգիս Ավետի (1901–1977), թատեր. գործիչ, դերասան, ռեժ.: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1941): 1935-ից՝ Երևանի բանվ. թատրոնի ռեժ., 1937–48-ին՝ ԵՊՀԹ գլխ. ռեժ. (նաև հիմնադիրներից): Բեմադրել է Կ. Գոլդոնիի «Հյուրանոցի տիրուհին», Գ. Սունդուկյանի «Պեպո», Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար», Ի. Շվարցի «Ձյունե թագուհին» և այլ գործեր:

ՔՈՉԱՐՅԱՆ Ստեփան Աշոտի (1928–1997), փիլ.: Փիլ. գիտ. դ–ր (1970), պրոֆ. (1974): Աշխ-ները վերաբերում են պատերազմի և խաղաղության, ինչպես նաև գաղափարախոս. պայքարի խնդիրներին:

ՔՈՉԱՐՅԱՆ Սուրեն Հովակիմի (1904–1979), ասմունքող, դերասան: ՀԽՍՀ (1945), ՌԽՖՍՀ (1967) ժող. արտիստ: 1925–32-ին՝ Երևանի Առաջին պետ. թատրոնի դերասան, 1939-ից՝ Սոսկվայի ֆիլհարմոնիայի մենակատար: 1932-ից զբաղվել է ասմունքով (հայ., ռուս.): Ք. ստեղծել է «Մի դերասանի թատրոն». խաղացանկում՝ Հ. Թումանյանի, Ե. Չարենցի գործերից, «Սասունցի Դավիթ» էպոսը, «Հազար ու մեկ գիշերը», Ջ. Բոկաչչոյի «Դեկամերոն», Շ. Ռուսթավելու «Ընձենավորը», Հոմերոսի «Իլիական», Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի», «Հայ ժողովրդական հեքիաթներ» ևն: Հեղինակ է «Կենդանի խոսքի ոլորտներում» (1963) գրքի:

ԽՍՀՄ (1951), ՀԽՍՀ (1975) Պետ. մրց–ներ:

ՔՈՉԱՐՅԱՆ Վլադիմիր Ալեքսանի (1950–1989), դերասան: ՀԽՍՀ վաստ. արտիստ (1984): 1977-ից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնների դերասան (Սողոմոն Թեհլերյան՝ Պ. Զեյթունցյանի «Ոտքի, դատարանն է գալիս», Լևոն Լամբարյան՝ «Հացավան»՝ ըստ Ն. Զարյանի, Քննիչ՝ Ա. Արաքսմանյանի «Հյուսիսային ռապսոդիա», ևն): Նկարահանվել է «Չեզոք իրավիճակ», «Սիրամարգի ճիչը», «Հեծյալը, որին սպասում են», «Մենավոր ընկուզենի», «13–րդ առաքյալը», «Դեմքով պատին» և այլ ֆիլմերում:

ՔՈՉԱՐՅԱՆՑ Սամվել Գրիգորի (1909–1993), կոնստրուկտոր: Տեխ. գիտ. դ–ր (1958), պրոֆ. (1962): ՌԽՖՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1962): Սոց. աշխ. հերոս (1962, 1984): Ռազմավար. ատոմ. և միջուկ. զենքի գլխ. կոնստրուկտոր: Աշխ-ները վերաբերում են հատուկ ռազմ. տեխնիկայի բնագավառին, ջրածն. ռումբի, բալիստիկ հրթիռների, ռադիոտեխ. սարքերի մշակման ու կատարելագործման հարցերին: Մասնակցել է Մոսկվայի հակահրթիռ. պաշտպ–յան համակարգի ստեղծմանը, ԽՍՀՄ–ում ատոմ. և ջրածն. զենքի ստեղծման ու փորձարկման աշխ–ներին:

Լենինյան (1961), ԽՍՀՄ Պետ. (1949, 1951, 1954, 1977) մրց–ներ: Ծննդավայր Գավառում կանգնեցվել է Ք–ի կիսանդրին:

ՔՈՉԱՐՈՎ, (Քոչարյան) Հրանտ Եգորի (1932–2007), աստղաֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ–ր (1971), պրոֆ. (1972): 1971-ից աշխատել է Ս. Պետերբուրգում: Աշխ-ները վերաբերում են միջուկ. ֆիզիկային, նեյտրոն. աստղաֆիզիկային, արեգակն. բռնկումներին, գերնոր աստղերի պայթյուններին: Ք-ի գլխավորությամբ մշակված «Ռիֆմա» սարքով (տեղադրվել է «Լուսնագնաց–1» և «Լուսնագնաց–2»-ի վրա) որոշել են լուսնահողի քիմ. բաղադրությունը: ՌԲՆԳԱ թղթ. անդամ (1998):

Պրոֆ. Շուլցի անվ. մեդալ (1978, ԱՄՆ):

ՔՈՉԻՆՅԱՆ Անտոն Երվանդի (1913–1990), պետ., կուս. գործիչ: ՀԽՍՀ կոմկուսի ԿԿ 1-ին քարտուղար (1966–74), ՆԽ նախագահ (1952–66), միաժամանակ՝ ԱԳ նախարար (1954–56): Լուրջ ներդրում ունի երկրի տնտ. և մշակույթի առաջընթացի գործում:

Լենինի (1963, 1973), ՀՄՊ 2–րդ աստիճանի (1945), «Պատվո նշան» (1940) շքանշաններ:

ՔՈՍ, մաշկի ինվազիոն հիվանդություն: Հարուցիչները քոսի տզերն են: Վարակը փոխանցվում է հիվանդից կամ նրա սպիտակեղենի, հագուստի միջոցով: Բնորոշ են ուժեղ քորը (հատկապես՝ գիշերը), հանգուցիկաբշտիկ. ցաները, «քոսային ուղիները» մաշկում:

ՔՈՍԱ ԵՐԵՑ, XVII դ–ի բանաստեղծ, քին.: Հեղինակ է «Կիտուր», «Կուզեմ կանկաղ անեմ ի սատանայէ» սկսվածքով և այլ ոտանավորների, որտեղ շոշափել է սոցիալ. ու կենցաղ. հարցեր:

ՔՈՍԹՆԵՐ (Costner) Քևին (ծ. 1955), ամերիկացի դերասան, կինոռեժ.: Նկարահանվել է «Կտակ», «Սիլվերադո», «Ֆանտաստիկ պատմություններ», «Անկաշառները», «Զենքի առևտրականը», «Թիկնապահը» և այլ ֆիլմերում, նկարահանել է «Պար գայլերի հետ» (1990), «Ո՞վ եք դուք, պարոն Բրուքս» (2007) կինոնկարները: «Օսկար» մրց. (1991-ին՝ կրկնակի):

ՔՈՍՅԱՆ Արամ Վաղարշակի (ծ. 1957), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1997): Աշխ-ները վերաբերում են Առաջավոր Ասիայի և միջերկրածովյան ավազանի ինագույն և Հայկ. լ–աշխարհի վաղ շրջանի պատմության հարցերին:

ՔՈՍՅԱՆ Շավարշ Արզումանի (1925–1994), հիգիենիստ: Բժշկ. գիտ. դ–ր (1969), պրոֆ. (1970): Վաղարշակ *Քոսյանի* եղբայրը: Աշխ-ները վերաբերում են ֆենիլկարբոնաթթվային հերբիցիդների թունաբանությանն ու նրանց արտադրյան և օգտագործման ժամանակ աշխ-ի հիգիենային:

ՔՈՍՅԱՆ Վաղարշակ Արզումանի (1927–1992), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ–ր (1968), պրոֆ. (1970): ՀԽՍՀ բարձրագույն դպրոցի վաստ. գործիչ (1982): Շավարշ *Քոսյանի* եղբայրը: Հեղինակ է «Ժամանակակից հայերենի նախադասության վերլուծության հարցեր» (1976), «Գրաբարի բառակապակցությունները» (1980), «Միջին հայերենի բառակապակցությունները» (1984), «Բառակապակցական կազապարների զարգացումը հայերենում» (1990) աշխ-ների:

ՔՈՍ-ՔՈՈՒԿ (Scabiosa), **քոսաբույս**, ակքանազգիների ընտանիքի միամյա կամ բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 100 տեսակ՝ Եվրասիայում և Աֆրիկայում, հիմնականում՝ Միջերկրածովյքում, ՀՀ-ում՝ բոլոր մարզերի լ–գոտիներում: Բոլոր տեսակները մեղրատու են, որոշ տեսակներ՝ գեղազարդիչ:

«ՔՈՎԵՆՏ ԳԱՐԴԵՆ» (Covent Garden, թագավոր. օպեր. թատրոն), օպեր. թատրոն Լոնդոնում, հիմնադրվել է 1732-ին, 1949-ից՝ պետ.: Խաղացանկում՝ անգլիացի կոմպոզիտորների և համաշխ. դասականների երկերից (ընագրի լեզվով), նաև բալետ. ներկայացումներ:

ՔՈՐԱՆԱ (Khorana) Հար Գոբինդ (1922–2011), հնդիկ մոլ. կենսաբան, կենսաքիմիկոս: ՌԳԱ. արտ. անդամ (1971): 1960-ից՝ ԱՄՆ-ում: Աշխ-ները վերաբերում են կոֆերմենտների, նուկլեոտիդների և նուկլեինաթթուների սինթեզին: Առաջինն է սինթեզել փ–ՌՆԹ-ն: Մեծ ներդրում ունի գենետիկ. կոդի վերծանման մեջ:

Նոբելյան մրց. (1968, Ռ. Ու. *Հոլլիի* և Մ. Ու. *Նիրենբերգի* հետ):

ՔՈՐԴԱ. (հուն.՝ chorda – լար), **թիկնալարավորներ**, բարձրակարգ կենդանիների տիպ: Բնորոշ է քորդայի, մեջքային նյարդախողովակի և խոիկ. ճեղքերի առկայությունը: Ընդգրկում է 3 ենթատիպ՝ թրթուրաքորդավորներ, անգանգներ (գլխաքորդավորներ) և ողնաշարավորներ (գանգավորներ): Հայտնի են մինչև 52 հգ. ժամանակակից տեսակներ:

ՔՈՐԹՆԻ (Courtenay) Թոմ (ծ. 1937), անգլիացի դերասան: Խաղացել է Լոնդոնի «Օլդ Վիկ» թատրոնում: 1962-ից նկարահանվել է «Երկար վազքուղու միայնակ վազորդը», «Հանուն թագավորի և հայրենիքի», «Դոկտոր Ժիվագո», «Չկան՝ ջրի երես ելնելու օրը», «Մեկ օր Իվան Դենիսովիչի կյանքից», «Հանդերձարարը» և այլ ֆիլմերում:

ՔՈՐՄԱԿ (Cormack) Ալան Մակլեոդ (1924–1998), ամերիկացի ֆիզիկոս: Սկսել է (1936) շերտագրության պատկերի վերականգնման համակարգչ. մեթոդ: Նոբելյան մրց. (1979, Գ. Ն. *Հաունսֆիլդի* հետ):

ՔՈՐՄԵՆ (Corman) Ռոջեր Ուիլյամ (ծ. 1926), ամերիկացի կինոռեժ., սցենարիստ, պրոդյուսեր: Ճանաչվել է Է. Պոյի ստեղծագործությունների ազատ էկրանավորումներով («Ձրիհոր և ճոճանակ», 1961, «Ագռավը», 1962, «Կարմիր մահվան դիմակը», 1964): Նկարահանել է նաև «Վայրի հրեշտակներ» (1966), «Կոտորած Սուրբ Վալենտինի օրը» (1966), «Արյունարբու մամա» (1970) և այլ ֆիլմեր: Հատուկ «Օսկար» մրց. (2009):

ՔՈՐՆԵԼԵՐԳ (Kornberg) Արթուր (1918–2007), ամերիկացի կենսաքիմիկոս: Ռ. *Քորնբերգի* հայրը: Հայտնագործել և առանձնացրել է ԴՆԹ-պոլիմերազ ֆերմենտը, որի օգնությամբ անբջիջ համակարգում սինթեզել է բակտերիոֆագերից մեկի կենսաբանորեն ակտիվ ԴՆԹ-ի մոլ.: Նոբելյան մրց. (1959, Մ. *Չոռայի* հետ):

ՔՈՐՆԵԼԵՐԳ Ռոջեր (ծ. 1947), ամերիկացի մոլ. կենսաբան: Ա. *Քորնբերգի* որդին: Մոլ. մակարդակով նկարագրել է տրանսկրիպցիայի (ԴՆԹ–ից ՌՆԹ–ի վրա գենետիկ. տեղեկույթի փոխանցման) մեխանիզմները: Նոբելյան մրց. (2006):

ՔՈՐՆՖՈՐԹ (Cornforth) Ջոն Ուորկապ (1917–2013), ավստրալացի քիմիկոս-օրգանիկ: Հետազոտել է խոլեստերինի կենսասինթեզի մեխանիզմը բջջում (իր առաջարկած «նշակիր նախորդների» եղանակով): Նոբելյան մրց. (1975, Վ. *Պրելոգի* հետ):

ՔՈՐՊՏԻԿ, մաշկ. հիվանդությունների խումբ. հիմն. ախտանշանը նոպայաձև ուժեղ քորն է՝ բշտիկահանգուցիկ. տարրերի հետագա զարգացմամբ: Նկատվում է նևրոզների, նյութափոխանակության խանգարումների, պատրաստուկների հանդեպ անհանդուրժողականության, ջերմաստիճանի կտրուկ փոփոխությունների դեպքերում: Տարբերում են Հերբրայի մանկ., ամառ., ձմեռ. և այլ Ք–ներ:

ՔՈՈՒԱՐԴ (Coward) Նոել Փիրս (1899–1973), անգլիացի դրամատուրգ, ռեժ., դերասան: Հեղինակ է «Ձրապտույտ» (1924), «Խոտի տենդ» (1925), «Մերկ ջութակահարուհին» (1956) կատակերգությունների, «Տրտմություններ և ուրախություններ» (1928), «Մասնավոր կյանքեր» (1930) և այլ պիեսների, «Եվ ճակատամարտերի բոցը, և՛ հաղթանակների հանդիսությունները» (1960), «Սիրունիկ Պոլի Բաոլոուն» (1964) վեպերի: Ք–ի պիեսների հիման վրա ստեղծվել են կինոնկարներ: Նկարահանվել է կինոնկարներում:

ՔՈՈՒԶ (Coase) Ռոնալդ (1910–2013), բրիտանացի տնտեսագետ: 1951-ից՝ ԱՄՆ-ում: Աշխ-ները վերաբերում են սեփականության իրավունքի և վերբաժնետիր. ծախքերի տեսության հարցերին:

Նոբելյան մրց. (1991):

ՔՈՈՒԹՍ (Coates) Ալբերտ (1882–1953), անգլիացի դիրիժոր: 1911–17-ին՝ Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնի գլխ. դիրիժոր, 1919–22-ին՝ Լոնդոնի սիմֆ. նվագախմբի ղեկ.: 1946-ից ՀԱՀ-ում ղեկավարել է Յոհաննեսբուրգի և Քեյփթաունի սիմֆ. նվագախմբերը:

ՔՈՓԼԵՆԴ (Copland) Աարոն (1900–1990), ամերիկացի կոմպոզիտոր: Ամերիկ. կոմպոզիտոր. դպրոցի հիմնադիրներից: Հանդես է եկել նաև որպես դաշնակահար և դիրիժոր: Հեղինակ է օպերաների («Քնքուշ հող», 1954, ևն), բալետների («Ռոդեո», 1942, ևն), 3 սիմֆոնիայի, «Լինքոլնի դիմանկարը» (1942) պոեմի՝ սիմֆ. նվագախմբի և ասմունքողի համար, ևն:

ՔՈՔՍ (Cox) Կլոդ Էդվարդ (ծ. 1947), բանասեր–հայագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1979): Հեղինակ է «Հայերեն Աստվածաշունչ» (1978), «Հայկական Աստվածաշնչի կիլիկյան վերանայված հրատարակության շուրջը» (1984), «Հակաճառություն» ների տեքստային քննության հայերեն տարբերակի գործածությունը» (1985) և այլ աշխ-ների:

ՔՈՔՍ Քերոլայն (ծ. 1937), բարոնուհի, Մեծ Բրիտանիայի լորդերի պալատի անդամ և նախկին փոխխոսնակ: Իրավապաշտպան, փիլ-յան և սոցիոլոգիայի դ–ր, ԵՊՀ պատվ. դ–ր (1994): Արցախյան պատերազմի տարիներին բազմիցս եղել է Արցախում, նյութ. և բարոյական օգնություն ցուցաբերել արցախահայությանը: Ք–ի մասին է Բ. Կարապետյանի «Անգլուհու արցախյան ոդիսականը» գիրքը (1994): ՀՀ «Պատվո շքանշան» (2009), Արցախի «Երախտագիտություն» մեդալ:

ՔՈՔՔՐՈՖԹ (Cockcroft) Ջոն Դուգլաս (1897–1967), անգլիացի ֆիզիկոս: Ստեղծել է (1932-ին, Է. *Ռութոնի* հետ) պրոտոնների առաջին արագացուցիչը (կասկադ. գեներատոր) և իրականացրել արհեստականորեն արագացված պրոտոններով միջուկ. ռեակցիա: 1939–44-ին ղեկավարել է անգլ. ռադարի մշակման աշխ-ները: Նոբելյան մրց. (1951, Է. Ուոլթոնի հետ):

ՔՈՒՆԱ., ավան Սյունիք նահգ-ի Երնջակ գավ-ում (այժմ՝ Նախիջևանի Հ. Ջուլֆայի շրջանում): Հատկապես հայտնի է դարձել, երբ այնտեղ՝ Սբ Աստվածածին եկեղեցում 1330-ին հայ կաթոլիկները հիմնադրել են միաբանություն և դպրոց (տես *Քունայի դպրոց*): Եկեղեցու ավերակներում 1899-ին հայտնաբերվել է 1191-ի արձանագրությամբ քառաթև խաչ:

Համալիրը լքվել է 1740-ից հետո: Սբ Աստվածածնից մոտ 600 մ հվ–արմ. մինչև 1970-ական թթ. նշմարելի էին Սբ Հռիփսիմե եկեղեցու ավերակները: Ք–ից էր *Մխիթար Ա. Գոշեցի* կաթողիկոսը:

ՔՈՒՆԱՅԻ ԴՊՐՈՑ, միջնադար. Հայաստանի բարձր տիպի կրթ. հաստատություն: Հիմնադրվել է 1330-ին Քունայի վանքում՝ *Բարդուղիմեոս Բոլոնիացու* և *Հովհաննես Քունեցու* ջանքերով, կաթոլիկություն տարածելու նպատակով: Դպրոցին կից գործել է գրչատուն: 1330–40-ական թթ-ին Ք. դ–ում են գործել *Հակոբ Քունեցին*, Զաքարիան, Սահակ Վանեցին և ուր.: Ք. դ–ում թարգմանված աշխ-ներից հայտնի են ավելի քան 15-ը:

ՔՈՒՆԱՅԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, ճարտ. հուշարձան Սյունիքի նահգ-ի Երնջակ գավ-ի Քունա ավանում (այժմ՝ Նախիջևանի ԻՀ Ջուլֆայի շրջանում): Եկեղեցում գործել է *Քունայի դպրո-*

ցր, որը կառուցվել է 1330-ին: Աղյուսաշեն, քառակուսի հատակագծով եկեղեցին այժմ կիսավեր է:

ՔՍԱՅՈՒՂԵՐ, նավթ. և սինթետիկ յուղեր, օգտագործում են որպես քսանյութեր: Տարբերում են շարժիչային, փոխհաղորդչ., արդ. և այլ Ք.: **Պինդ Ք.** օգտագործում են փոշու ձևով, քսայուղ. ծածկույթների փափուկ մետաղների թաղանթների տեսքով:

«21-ՐԴ ԴԱՐ», հաս-քաղ. տեղեկատվ., վերլուծ. հանդես (2003-ից, Երևան՝ հայ., անգլ.): «*Նորավանք*» գիտակրթ. հիմնադրամի հրտ-յուն: Հիմնադիր-խմբ.՝ Գագիկ Հարությունյան:

ՔՍԱՆՅՈՒԹԵՐ, շփումը նվազեցնող մածուցիկ նյութեր: Հիմն. Ք. են *քսայուղերը*, պլաստիկ քսուքները, պինդ քսուքները և քսասառեցնող հեղուկները:

ՔՍԱՆՏԻՆ, պուրինային հիմք: Ազատ վիճակում գոյություն ունի տարբեր հյուսվածքներում և կենսբ. հեղուկներում: Կալցիում. աղերի ձևով պարունակվում է միզաքարերում: Ունի միզամուղ հատկություն: Քսանտինօքսիդազ ֆերմենտը Ք. փոխարկում է միզաթթվի. նրա ժառանգ. թերությունը հանգեցնում է քսանտինուրիայի (Ք-ի արագ դուրսբերումը մեզով, քսանտինային աղերի առաջացումը երիկամներում):

ՔՍԵՆՈ... (հուն.՝ xenos – օտար), բարդ բառերի մաս. ցույց է տալիս երևույթին, մարմնին օտար լինելը:

ՔՍԵՆՈԲԻՈՏԻԿՆԵՐ (< *քսենո...* և հուն.՝ bios – կյանք), օրգանիզմի համար օտարածին միացություններ (արդ. աղտոտիչներ, պեստիցիդներ, կենցաղ. քիմիայի պատրաստուկներ, դեղանյութեր ևն): Զգալի քանակությամբ արտաքին միջավայր ընկնելով՝ Ք. կարող են ազդել օրգանիզմների գենետիկ. ապարատի վրա, ոչնչացնել նրանց, խախտել կենսոլորտում բնական գործընթացների հավասարակշռությունը: Օրգանիզմում Ք-ի փոխարկումների, նրանց թունազերծման և դեգրադացման ուղիների ուսումնասիրումը (միկրոօրգանիզմների օգնությամբ) կարևոր է սանիտարիայի. միջոցառումների, բնության պահպանության կազմակերպման համար:

ՔՍԵՆՈԳԱՄԻԱ (< *քսենո...* և հուն.՝ gamos – ամուսնություն), խաչաձև փոշոտում, որի դեպքում մեկ բույսի ծաղիկները փոշոտվում են նույն տեսակի ուրիշ բույսի ծաղիկների ծաղկափոշիով:

ՔՍԵՆՈՆ (Xenon), Xe, տարրերի պարբեր. համակարգի VIII խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 54, ա. զ.՝ 131,293, իներտ գազ է: Անվանումը՝ հուն. xenos – «օտար» բառից (բացահայտվել է որպես *կրիպտոնի* խառնուրդ): Խտ.՝ 5,851 $գ/դմ^3$, $t_{եռ.}$՝ –108,1°C: 1-ին իներտ գազն է, որի համար ստացվել են քիմ. միացություններ ($XePtF_6$): Կիրառվում է *քսենոնային լամպում*: Ֆտորիդները՝ XeF_2, XeF_4, հզոր օքսիդիչներ են և ֆտորացնող նյութեր:

ՔՍԵՆՈՆԱՅԻՆ ԼԱՄՊ, բարձր և գերբարձր ճնշման լույսի պարպում. աղբյուր, որում աղեղ. պարպումը կատարվում է Xe-ի միջավայրում: Բնութագրվում է ճառագայթման սպեկտրով, որը մոտ է արեգակնայինին: Օգտագործում են լուսարձակներում, կինոպրոյեկտորներում:

ՔՍԵՆՈՓԱՆԵՍ Կոլոփոնացի (Xenophanes Colophanius, մ. թ. ա. 570–478-ից հետո), հույն բանաստեղծ և փիլ.: Ք-ի փիլ-յան հիմքում տիեզերքի միասնությունն է, գոյի (կեցության) միասնության, հավերժության և անփոփոխության գաղափարը: Հանդես է եկել կրոնի մարդակերպության և բազմաստվածության քննադատությամբ:

ՔՍԵՆՈՖՈՆ (Xenophon) **Աթենացի** (մ. թ. ա. մոտ 430–355/354), հույն պատմագիր, գրող: Ք-ի ամենանշանակալի երկը՝ «Անաբասիսն» է (հայ.՝ 1870), որտեղ շարադրել է 10 հզ. հույների մասնակցությունը *Կյուրոս Կրտսերի* արշավանքին և նահանջը Հայաստանի տարածքով դեպի Սև ծով: Երկը հարուստ նյութ է պարունակում մ. թ. ա. V–IV դդ-ի Հայաստանի քաղ., տնտ. կյանքի մասին: Հեղինակ է նաև «Կյուրոպեդիա» (հայ.՝ «Քսենոփոնտեայ՝ Կիւրոսի խրատու պատմութիւնք», 1843, «Կյուրոսապատում», 1971), «Հելլենականք», «Հիշողություններ Սոկրատեսի մասին», «Խնջույք», «Սոկրատեսի պաշտպանականը», «Տնապարական» երկերի, տնտ., քաղ. և գործն. բնույթի այլ գործերի («Հիերոն», «Որսորդական», «Ձիավարության մասին», «Եկամուտների մասին»):

ՔՍԵՆՈՖՈԲԻԱ (< *քսենո...* և *...ֆոբիա*), **օտարավախություն**, սևեռուն վախ անծանոթ անձանցից: Ատելություն, անհանդուրժողականություն օտար, անծանոթ, անսովոր որևէ երևույթի հանդեպ:

ՔՍԵՐՈ... (հուն.՝ xeros – չոր), բարդ բառերի սկզբնամաս. ցույց է տալիս չորին, չորությանը վերաբերելը:

ՔՍԵՐՈԳՐԱՖԻԱ (բառացի՝ չորատպություն), **քսերոքս**, պատճենահանման եղանակներից. լուսազգայուն նյութի վրա առաջացած ներկափոշային պատկերը թղթին է փոխանցվում տաքացնելու միջոցով՝ ճնշման տակ: Հայտնագործվել է 1938-ին ԱՄՆ-ում, կոչվել է մեքենաներն արտադրող «Քսերոքս» ֆիրմայի անունով:

ՔՍԵՐՈԴԵՐՄԱ ԳՈՒՆԱԿԱՅԻՆ, **չորամաշկություն**, բնածին քրոնիկ. մաշկ. հիվանդություն: Ախտանշանները՝ գունավորում, թեփոտում, ճաքեր, խոցոտումներ, գորտնուկ. տարաճումներ, ապաճման օջախներ՝ հաճախ մաշկի բաց (ԱՄՁ-ման ենթարկված) հատվածների վրա:

ՔՍԵՐՈՖԻՏՆԵՐ, չոր պայմաններում ապրելուն հարմարված բույսեր. կարող են դիմանալ գերտաքացմանը և ջրազրկմանը: Հիմնականում անապատ. և կիսաանապատ. բույսեր են: Բաժանվում են մի շարք էկոլոգ. խմբերի՝ սուկուլենտներ, հեմիքսերոֆիտներ, էվքսերոֆիտներ, քսիլոքսերոֆիտներ: ՀՀ-ում տարածված են *քարաքոսերը*, *կապտականաչ ջրիմուռներ* ևն:

ՔՍԵՐՔՍԵՍ, Ծոփքի և Կոմմագենեի միացյալ հայկ. պետության թագավոր՝ մ. թ. ա. III դ-ի վերջին: *Երվանդունիների* արքայատան կրտսեր ճյուղից: Երկրում Սելևկյանների դիրքն ամրապնդելու համար *Անտիոքոս III* **Մեծը** զինել է գանձվող հարկերի մի մասն և Ք-ին կնության տվել իր քրոջը: Սակայն շուտով վերջինի միջոցով սպանել են տվել նրան և երկիրը վերածել Սելևկյան պետության առանձին վարչամիավորի: Ծոփքում ստրատեգոս է նշանակվել *Զարևիռ*: Ք-ի պատկերով հատվել են պղնձե դրամներ:

ՔՍԵՐՔՍԵՍ I (հին պարսկ.՝ Xsayarsa – հերոսների արքա, մ. թ. ա. մոտ 522–465), Պարսից արքա՝ *Աքեմենյանների* հարստությունից: Կառավարել է մ. թ. ա. 486–465-ին: *Դարևի I*-ի որդին: Մ. թ. ա. 480–479-ին գլխավորել է պարսկ. արշավանքը Հունաստան (նրա բանակում եղել են նաև հայեր), որն ավարտվել է պարսիկների պարտությամբ: Սպանվել է դավադրությամբ:

ՔՍԵՐՕՖԹԱԼՄԻԱ (< *քսերո...* և հուն.՝ ophthalmos – աչք), աչքի լորձաթաղանթի և եղջերաթաղանթի չորություն՝ կապված նրանց սնուցման խանգարման հետ: Առաջանում է տրախոմայի, աչքի այլ հիվանդությունների, երբեմն՝ քիմ. կամ ջերմ. այրվածքների, վիտամին. անբավարարության դեպքերում:

ՔՍԻԼԵՄ (հուն.՝ xylon – հատած ծառ), բնափայտ, բարձրակարգ բույսերի հյուսվածք, որը ծառայում է ջրի և հանք. աղերի տեղափոխմանն արմատներից դեպի տերևներ և այլ օրգաններ: Կազմված է անցկացնող տարրերից (տրաքեիդ, անոթներ), մեխ. (լիբրիֆորմ) և պարենքիմ. բջիջներից:

ՔՍԻԼԻԴԻՆԵՆԵՐ, երկմեթիլանիլիններ կամ ամինաքսիլոյներ, 6 իզոմերներ, տարբերվում են մեթիլ խմբերի դիրքերով: 2,4-Ք. և 2,5-Ք. օգտագործում են ազոներկերի և ազոգունանյութերի, 2,6-Ք.՝ պեստիցիդների, 3,4-Ք.՝ դեղամիջոցների (օր.՝ ռիբոֆլավինի) արտադր-յան մեջ, տեխ. Ք.՝ բարձրօկտան. հավելանյութ ավիացիոն բենզինների համար, կաուչուկների ռետինացման արագացուցիչ, հանքերի ֆլոտացման ժամանակ՝ փրփրեցնող: Թունավոր են:

ՔՍԻԼԻՏ, $HOCH_2(CHOH)_3CH_2OH$, քաղցրահամ անգույն բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 93–94°C: Ք. 2 անգամ քաղցր է եղեգնաշաքարից: Ունի լեղամուղ և թուլացնող ազդեցություն: Կիրառվում է հրուշակեղենի արտադր-յան մեջ՝ շաքարախտից ճարպակալում ունեցող հիվանդների համար, ալկիդային խեժերի արտադր-յան հումք է:

ՔՍԻԼՈԼՆԵՐ, $C_6H_4(CH_3)_2$, *օրթո-*, *մետա-* և *պարա-*Ք., երկմեթիլբենզոլներ, անգույն հեղուկներ են, $t_{եռ.}$՝ 144,4, 139,1 և 138,4°C՝ համապատասխանաբար: Պարունակվում են քարածխային խեժում և նավթամշակման արգասիքներում: Կիրառվում են ֆտալաթթուների սինթեզում, ինչպես նաև որպես լուծիչներ և ավիացիոն բենզինների բարձրօկտան. հավելանյութեր:

ՔՍԻԼՈՖՈՆ (< հուն. xilon – փայտ և phone – ձայն), հարված. երաժշտ. գործիք: Տարածված է առավելապես Աֆրիկայում, Հվ-արլ. Ասիայում, Լատ. Ամերիկայում, Եվրոպայում (պրոֆեսիոնալ երաժշտության մեջ՝ XIX դ-ից): Ժամանակակից տեսակներից են մարիմբան և տուբաֆոնը:

ՔՍԻՖՈՊԱԳՆԵՐ (< հուն. xyphos – թուր և pagos – կաշկանդված), զարգացման արատ, որի դեպքում երկվորյակները սերտաճած են կրծոսկրի թրաձև ելուստի շրջանում: Տես նաև *Պիգոպագներ*:

ՔՎԱԴՐԱՆՏ (լատ.՝ quadrans – քառորդը), հինավուրց անկյունաչափ. աստղագիտ. գործիք, որով չափել են երկնս. լուսատուների բարձր-յունը հորիզոնից և լուսատուների միջև եղած անկյուն. հեռ-յունը: Ք-ի բաժնօղակը (լիմբ) կազմել է շրջանի 1/4 մասը (այստեղից՝ անվանումը):

ՔՎԱԴՐԻԼԻՈՆ (ֆրանս.՝ quadrillion), 1-ով և 15 զրոներով պատկերվող թիվ, այսինքն՝ 10^{15}: Որոշ երկրներում Ք. են անվանում 10^{24} թիվը:

ՔՎԱԶԱՐՆԵՐ (անգլ.՝ quasar, quasi-stellar radiosource – «ռադիոճառագայթման քվազիաստղային աղբյուր»), էլեկտրամագնիս.

ճառագայթման արտագալակտիկ. հզոր աղբյուրներ: Դրանք հեռավոր գալակտիկաների ակտիվ միջուկներ են: Ք. ունեն փոքր անկյուն. չափեր և սպեկտր. գծերի մեծ *կարմիր շեղում*, որը վկայում է Արեգակն. համակարգից Ք–ի շատ մեծ հեռությունների մասին: Ճառագայթում են տասնյակ անգամ ավելի շատ էներգիա, քան ամենահզոր գալակտիկաները: Նրանց էներգիայի աղբյուրը դեռևս չի պարզվել:

ՔՎԱՋԻ... (լատ.՝ quasi – ասես թե, իբրև թե, գրեթե), բարդ բառերի մաս, որն իմաստով համապատասխանում է «կեղծ», «ոչ իսկական» (օր.՝ քվազի գիտնական), «գրեթե», «մոտավորապես» (օր.՝ ***քվազիհյուրեղ***) բառերին:

ՔՎԱՋԻԲՅՈՒՐԵՂ, պինդ մարմին, որի ատոմները բյուրեղ. ցանց չեն կազմում, բայց ունեն հեռավոր կոօրդինացիոն կարգ: Ք–ի համար բնորոշ են համաչափության ոչ ֆեդորովյան խմբերը, որոնք անհամատեղելի են բյուրեղների տրանսլյացիոն (զուգահեռ տեղափոխական) ինվարիանտության հետ:

ՔՎԱՋԻՄԱՄՆԻԿՆԵՐ, կոնդենսացված միջավայրերի (բյուրեղներ, հեղուկներ, պլազմաներ, միջուկ. նյութեր ևն) քվանտ. տեսության հիմնարար հասկացություն: Համակարգի տարր. գրգռումների քվանտներն են: Սովոր. մասնիկների նման Ք. բնութագրվում են էներգիայով, իմպուլսով (քվազիիմպուլսով), սպինով ևն: Միմյանց հետ փոխազդող մասնիկների համախումբը հատկություններով նման է Ք–ի իդեալական գազի: Գոյություն ունեն Ք–բոզոններ (ֆոնոններ, մագնոններ, էքսիտոններ, պլազմոններ ևն) և Ք–ֆերմիոններ (հաղորդականության էլեկտրոններ ու խոռոչներ):

ՔՎԱՋԻՄՈԴՈ (Quasimodo) Սալվադորե (1901–1968), իտալացի բանաստեղծ: Հեղինակ է «Էրատո և Ապոլոն» (1936), «Կյանքը երազ չէ» (1949), «Կեղծ և իսկական կանաչ» (1954), «Անզուգական երկիր» (1958) բանաստեղծությունների ժող–ների: Նոբելյան մրց. (1959):

ՔՎԱՋԻՕՊՏԻԿԱ, ռադիոֆիզիկայի բնագավառ, որն ուսումնասիրում է *մմ*–ային և ենթա–*մմ*–ային էլեկտրամագնիս. ալիքների առաջացումն ու տարածումն այնպիսի պայմաններում, երբ դրանք տարածվում են երկրչփ. օպտիկայի օրենքներով, բայց դիֆրակցիոն երևույթներն այդ պայմաններում նույնպես էական են: Ք–ի բնագավառի հիմն. ձեռքբերումը բաց ռեզոնատորների և կապի քվազիօպտիկ. գծերի ստեղծումն է:

ՔՎԱԽՎՐԵԼԻՒ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ, հայկ. ճարտ. հուշարձան ՎՀ Գորիի շրջանում՝ Կուր գետի ափին՝ համանուն գյուղի մոտակայքում: Վերագրվում է *Թամար* թագուհու ժամանակներին, գավթում թաղված է հայ ճարտ–ը: Վիմափոր միանավ դահլիճ է՝ կիսաշրջանաձև խորանով, հս–հվ ձգվում է նախասրահ–միջանցքը (արլ. պատը ծածկված է երկշարք ժայռափոր խաչքարերով, մի քանիսը թվագրված են XVII դ–ի սկզբով), ելքի առջև գավիթ–զանգակատունն է:

ՔՎԱՆՑ ԳԱՐԾՈՂԱՒԹՅԱՆ, նույնն է, ինչ *Պլանկի հաստատունը*:

«ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆ, փորձարար. մասնավոր դպրոց ՀՀ–ում: Առաջին ոչ պետ. դպրոցն է, հիմնադրվել է 1991–ին Երևանում: Ունի տարրական (1–4), միջին (5–9) դասարաններ, որտեղ ուսուցումը տարվում է պետ. հանրակրթ. դպրոցի ծրագրով, և ավագ (10–12) դասարաններ՝ մասնագիտ. հոսքերով: 2011–ից 11–րդ դասարանից սկսած իրականացնում է միջազգ. բակալավրիատի «Դիպլոմա» ծրագիր:

ՔՎԱՆՏԱՅԻՆ ԱՆՑՈՒՄՆԵՐ, քվանտ. համակարգի (ատոմի, մոլ–ի, ատոմի միջուկի, բյուրեղի) թռիչքաձև անցումները մի հնարավոր վիճակից մյուսին:

ՔՎԱՆՏԱՅԻՆ ԲՅՈՒՐԵՂ, բյուրեղ, որում բյուրեղ. ցանցի 0–ական տատանումների ամպլիտուդը համեմատական է ցանցի պարբերությանը կամ մեծ է նրանից: Ք. բ. է պինդ He, որն այդ պատճառով T→ 0K ջերմաստիճանի դեպքում բյուրեղանում է միայն ճնշման տակ: Ք. բ–ում արատները (մասնավորապես՝ դատարկությունը) տեղայնացված չեն, այլ քվազիմասնիկների տեսքով տարածվում են բյուրեղում:

ՔՎԱՆՏԱՅԻՆ ԳԱԶ, մասնիկներից (կամ քվազիմասնիկներից) կազմված գազ, որը ենթարկվում է *քվանտային վիճակագրությանը*: Տարբերում են *բոզե–գազ* և *ֆերմի–գազ*:

ՔՎԱՆՏԱՅԻՆ ԳԵՆԵՐԱՏՈՐ, կոհեռենտ էլեկտրամագնիս. ճառագայթման աղբյուր, որի գործողությունը հիմնված է ատոմների, իոնների և մոլ–ների ստիպող. ֆոնոններ ճառագայթելու հատկության վրա: Ռադիոտիրույթի Ք. գ–ին անվանում են *մազերներ*, օպտիկ. տիրույթի Ք. գ–ին՝ *լազերներ*:

ՔՎԱՆՏԱՅԻՆ ԴԻՖՈՒԶԻԱ, պինդ մարմիններում մասնիկների դիֆուզիան, որը պայմանավորված է *թունելային էֆեկտով*: Դիտվում է *քվանտային բյուրեղներում*:

ՔՎԱՆՏԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԴԻՆԱՄԻԿԱ, էլեկտրամագնիս. դաշտի և լիցքավորված մասնիկների (հիմնականում՝ էլեկտրոնների և պոզիտրոնների, մյուոնների) փոխազդեցության քվանտ. տեսություն: Ք. է. հիմնված է էլեկտրամագնիս. ճառագայթման փորձով հաստատված ընդհատունության վերաբերյալ պատկերացումների վրա: Էլեկտրամագնիս. դաշտի քվանտները՝ *ֆոտոնները*, տվյալ ճառագայթման ս հաճախության համար հնարավոր փոքրագույն էներգիայի՝ ε = hս և իմպուլսի՝ p = h/λ կրողներն են, որտեղ h–ը Պլանկի հաստատունն է, λ = c/ս–ն՝ ալիքի երկ–յունը, c–ն՝ լույսի արագությունը: Այսպիսով՝ էլեկտրամագնիս. ճառագայթմանը յուրահատուկ են ոչ միայն ալիք. (ընութագրվում է λ և ս մեծություններով), այլև ընդհատուն՝ մասնիկ. հատկությունները: Ք. է–ում էլեկտրամագնիս. ճառագայթման փոխազդեցությունը լիցքավորված մասնիկների հետ դիտարկվում է որպես մասնիկների՝ ֆոտոնների կլանում և առաքում: Ֆոտոնների փոխանակումը պայմանավորում է լիցքավորված մասնիկների փոխազդեցությունը: Մասնիկը կարող է առաքել, այնուհետև կլանել ֆոտոններ: Այսպիսի ինքնագործողությունը կամ մասնիկների փոխազդեցությունը սեփ. դաշտի հետ հանգեցնում է ատոմներում էներգիայի մակարդակների լեմբյան շեղմանը, գրման հատույթի ուղղումներին և այլ երևույթների: Ք. է. չափազանց ճշգրիտ նկարագրում է իր ընագավառին վերաբերող բոլոր երևույթները՝ նյութից ճառագայթման կլանման և գրման երևույթները, լիցքավորված մասնիկների միջև էլեկտրամագնիս. փոխազդեցությունը ևն: Ք. է–ի ճշմարտացիությունը հաստատված է մինչև ≥ 10^{-16} *սմ* հեռ–յան վրա:

ՔՎԱՆՏԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ, քվանտային ռադիոֆիզիկա, գիտ–յան և տեխնիկայի բնագավառ, որն ընդգրկում է էլեկտրամագնիս. ճառագայթման հաճախության գեներատորների, ուժեղարարների, փոխակերպիչների գործողության սկզբունքների ուսումնասիրությունը, նախագծումը և կիրառությունը, որոնց գործողությունը հիմնված է ստիպող. տատանումների կամ նյութի հետ ճառագայթման ոչ գծային փոխազդեցության վրա: Ք. է–ի սարքերից են ԳԲՀ քվանտ. ուժեղարարները, լազերները, հաճախության քվանտ. ստանդարտները, քվանտ. մագնիսաչափները, լազեր. գիրոսկոպները ևն:

ՔՎԱՆՏԱՅԻՆ ԷՖԵԿՏ ՀՈԼԼԻ, մակրոսկոպիկ. քվանտ. էֆեկտ, որը դիտվում է ցածր ջերմաստիճաններում մագնիս. ուժեղ դաշտում տեղակայված կիսահաղորդչի մակերևութ. բարակ շերտում, երբ մագնիս. դաշտն ուղղահայաց է այդ շերտին: Այդ դեպքում *Հոլլի էֆեկտով* պայմանավորված դիմադրությունը շերտի հարթության մեջ ընդունում է ընդհատուն արժեքներ՝ $2\pi\hbar/ne^2$ (n–ն ամբողջ կամ կոտորակ. ռացիոնալ թիվ է, ħ–ը՝ Պլանկի հաստատունը, e–ն՝ էլեկտրոնի լիցքը), իսկ ուղղահայաց ուղղությամբ հավասար է 0–ի: Ք. է. Հ. կարելի է օգտագործել ħ/e հարաբերությունը որոշելու, նաև էլ. դիմադրության միավորը՝ *Օհմը*, վերարտադրելու համար: Հայտնաբերել է Կ. ֆոն *Կլիտցինգը* 1980–ին:

ՔՎԱՆՏԱՅԻՆ ԹՎԵՐ, ֆիզ. մեծությունների հնարավոր, ընդհատուն արժեքներով ամբողջ կամ կոտորակ. թվեր, որոնք ընութագրում են քվանտ. համակարգերը (ատոմի միջուկ, ատոմ, մոլ. ևն) և առանձին տարր. մասնիկները:

ՔՎԱՆՏԱՅԻՆ ԺԱՄԱՑՈՒՅՑՆԵՐ, ատոմային ժամացույցներ, ժամանակի չափման սարքեր, որոնք պարունակում են հաճախության քվանտ. ստանդարտները կառավարող *քվարցային գեներատոր*: Ք. ժ–ում «ճոճանակի» դերը կատարում են ատոմները: Էներգիայի մի մակարդակից մյուսին անցնելիս ատոմների առաքած ճառագայթման հաճախությունը կարգավորում է Ք. ժ–ի ընթացքը: Այդ հաճախությունն այնքան կայուն է (հարաբեր. սխալը՝ 10^{-11}–10^{-13}), որ Ք. ժ–ով հնարավոր է ժամանակը չափել ավելի ճշգրիտ, քան աստղագիտ. մեթոդներով:

ՔՎԱՆՏԱՅԻՆ ԿԱՊ, տարածության մի կետից մյուսը քվանտ. տեղեկույթի (այսինքն՝ քվանտ. վիճակներում կոդավորված տեղեկույթի) հաղորդման մեթոդների ամբողջություն: Քվանտ. տեղեկույթի կրողները քվանտ. համակարգերն են, որոնք կարող են լինել տարբեր քվանտ. վիճակներում. առավել հարմար քվանտ. համակարգերը *ֆոտոններն* են: Ք. կ–ի համակարգը կազմված է քվանտ. վիճակների աղբյուրից, միջավայրից, որտեղ տարածվում են այդ վիճակները (կապուղի), և քվանտ. վիճակները չափող դետեկտորից: Ք. կ. ապահովում է տեղեկույթի առավել գաղտնի հաղորդումը:

ՔՎԱՆՏԱՅԻՆ ԿԱՄԿԱԴԱՅԻՆ ԼԱԶԵՐ, միաբևեռ կիսահաղորդչ. լազեր, որտեղ ճառագայթման գեներացումն առաջանում է էլեկտրոնների հաջորդ. թունելավորման ընթացքում՝ բազմաշերտ կիսահաղորդչ. կառուցվածքի մի բջջից հարևան բջիջ *ֆոտոնի* միաժամանակյա առաքմամբ: Ք. կ. լ–ի գաղափարն առա-

ջինը ձևակերպել են Ռ. Ֆ. Կազարինովը և Ռ. Ա. Սուրիսը 1971–ին: Ք. կ. լ–ի բազմաշերտ կիսահաղորդչ. կառուցվածքը գերցանց է՝ քվանտ. փոսերի հաջորդականություն, որոնք իրարից բաժանված են պոտենցիալ արգելքներով: Ք. կ. լ–ի ճառագայթման ալիքի երկ–յունը որոշվում է գերցանցի երկրչփ. հարաչափերով՝ պոտենցիալ արգելքների հաստությամբ և քվանտ. փոսերի լայն–յամբ: Ճառագայթման տիրույթը, միջին և հեռավոր ԵԿ–ից մինչև տերա (10^{12}) հերցային է:

ՔՎԱՆՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ, անալոգ. հաշվող. սարք, որտեղ հաշվող. գործողությունները կատարվում են քվանտ. մեխանիկայի օրենքներով: Ք. հ. քվանտ. ռեգիստր է, որը ներկառուցված է դաս. շրջապատում (կառավարող դաս. համակարգիչ, իմպուլս. դաշտերի գեներատոր, որը կառավարում է **քյուբիթների**՝ տարր. բջիջների էվոլյուցիան և նրանց վիճակների կառավարման միջոցները): Քվանտ. ռեգիստրը (Ք. հ–ի հիշողությունը) բաղկացած է մեծաթիվ քյուբիթներից, որոնք, այսպես կոչված, խառնաշփոթ վիճակում են, իսկ գործողությունները ենթադրում են կուբիտների քվանտամեխ. համագործակցություն: Հաշվման ընթացքում տվյալները քվանտ. տեղեկույթ են, որոնք շարժընթացի վերջում փոխարկվում են դասականի՝ քվանտ. ռեգիստրի վերջն. վիճակի չափման եղանակով: Քվանտ. չափման ելքը հավանականային է, այդ պատճառով հավաստի արդյունք ստանալու համար անհրաժեշտ է ալգորիթմի բազմակի կրկնություն: Ք. հ. մեծ հզորության (որը բազմիցս գերազանցում է դասականինը) հասնում է, այսպես կոչված, քվանտ. զուգահեռականության շնորհիվ:

ՔՎԱՆՏԱՅԻՆ ՀԵՂՈՒԿ, հեղուկ, որի հատկությունները որոշվում են քվանտ. օրինաչափություններով, որոնք հեղուկում ի հայտ են գալիս շատ ցածր ջերմաստիճաններում, երբ նրա մասնիկների ջերմ. շարժման *դը Բրոյլի ալիքի* երկ–յունը դառնում է միջմասնիկ. հեռ–յան կարգի: Ք. հ–ի օրինակներ են հեղուկ ^{4}He–ը և ^{3}He–ը, նաև նրանց խառնուրդը՝ բացարձակ 0–ի մոտ (1–2 K) ջերմաստիճանում: Ք. հ–ի հատկություններով օժտված են էլեկտրոնները մետաղներում և կիսահաղորդիչներում, *էքսիտոնները*՝ էքսիտոն. կաթիլներում, դիէլեկտրիկներում, պրոտոնները և նեյտրոնները՝ ատոմների միջուկներում:

ՔՎԱՆՏԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԿԱ, տեսություն, որը բացահայտել է միկրոմասնիկների շարժման նկարագրման եղանակը և օրենքները՝ տրված արտաքին դաշտերում: Քվանտ. տեսության հիմն. բաժիններից է: Ք. մ. առաջինը հնարավորություն է տվել նկարագրելու ատոմների կառուցվածքը և հասկանալու նրանց սպեկտրները, բացահայտելու քիմ. կապերի բնույթը, տարրերի պարբեր. աղյուսակը և այլ երևույթներ: Քանի որ մակրոսկոպիկ մարմինների հատկությունները որոշվում են դրանք կազմող մասնիկների շարժումներով և փոխազդեցություններով, Ք. մ–ի օրենքներով հնարավոր է բացահայտել մակրոսկոպ. երևույթների մեծամասնությունը: Այսպես՝ Ք. մ. հնարավորություն է տվել հասկանալու պինդ մարմնի բազմաթիվ հատկություններ, բացատրելու գերհաղորդականության, ֆեռոմագնիսականության, գերհոսունության և բազմաթիվ այլ երևույթներ: Քվանտամեխ. օրենքներն ընկած են միջուկ. էներգետիկայի, *քվանտային էլեկտրոնիկայի* և այլ երևույթների հիմքում: Ի տարբերություն դաս. տեսության՝ Ք. մ–ում բոլոր մասնիկներն ունեն և՛ մասնիկ., և՛ ալիք. հատկություններ, որոնք ոչ թե բացառում, այլ լրացնում են միմյանց: Էլեկտրոնների, պրոտոնների և այլ մասնիկների ալիք. բնույթը հաստատվել է մասնիկների *դիֆրակցիայի* փորձերով: Նյութի մասնիկա–ալիք. երկվությունը պարտադրել է ֆիզ. համակարգերի և ժամանակի ընթացքում նրանց փոփոխության նկարագրման նոր մոտեցում: Քվանտ. համակարգի վիճակը նկարագրվում է *ալիքային ֆունկցիայով*, որի մոդուլի քառակուսին որոշում է տվյալ վիճակի հավանականությունը և, հետևաբար, այդ համակարգը բնութագրող ֆիզ. մեծությունների արժեքների հավանականությունները: Ք. մ–ից բխում է, որ ոչ բոլոր ֆիզ. մեծությունները կարող են միաժամանակ ունենալ ճշգրիտ արժեքներ (տես *Անորոշությունների սկզբունք*): Ալիք. ֆունկցիան ենթարկվում է *վերադրման սկզբունքին*, ինչը և բացատրում է, մասնավորապես, մասնիկների դիֆրակցիան: Քվանտ. տեսության տարբերիչ գիծը մի շարք ֆիզ. մեծությունների համար հնարավոր արժեքների ընդհատունությունն է. դրանք են էլեկտրոնների էներգիան ատոմներում, շարժման քանակի մոմենտը և նրա պրոյեկցիաները կամայական ուղղությունների վրա են: Դաս. տեսության մեջ բոլոր այդ մեծությունները կարող են փոփոխվել միայն անընդհատորեն: Ք. մ–ում հիմնարար դեր է խաղում *Պլանկի հաստատունը*՝ ħ–ը՝ բնության հիմն. մասշտաբներից մեկը, որը սահմանագիծ է անցկացնում դաս. ֆիզիկայով նկարագրվող (այդ դեպքում ħ = 0) երևույթների տիրույթի և այն երևույթների միջև, որոնց ճշգրիտ մեկնաբանության համար անհրաժեշտ է քվանտ. տեսությունը: Ոչ ռելյատիվիստ. (լույսի արագությունից փոքր շարժման արագություններով մասնիկների համար) Ք. մ. ավարտուն, տրամաբանորեն անհակասական տեսություն է, որն ամբողջովին համաձայնեցված է փորձի հետ երևույթների և շարժընթացների այն շրջանի համար, որոնցում մասնիկներ չեն ծնվում, չեն ոչնչանում կամ միմյանց չեն փոխարկվում:

ՔՎԱՆՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ, նկարագրում է մեծաթիվ մասնիկներից կազմված քվանտ. համակարգերի հատկությունները. ամբողջ սպինով մասնիկների համար դա *Բոզե–Էյնշտեյնի վիճակագրությունն* է, կիսաամբողջների համար՝ *Ֆերմի–Դիրակի վիճակագրությունը*:

ՔՎԱՆՏԱՅԻՆ ՎԻՃԱԿՆԵՐ, ֆիզ. համակարգի վիճակներ, որոնք ենթարկվում են քվանտ. մեխանիկայի օրենքներին: Ք. վ. նկարագրվում են ալիք. ֆունկցիայով (մաքուր Ք. վ.) կամ խտության մատրիցայով (խառը Ք. վ.): Տրված էներգիայով Ք. վ–ի ալիք. ֆունկցիան Շրեդինգերի հավասարման լուծումն է՝ համակարգի համիլտոնիանի սեփ. արժեքների համար: Մաքուր Ք. վ. նույնացվում են վեկտորների հետ հիլբերտյան տարածությունում, խառը Ք. վ. նկարագրվում են խտության օպերատորներով: Գոյություն ունեն Ք. վ–ի տարբեր տեսակներ՝ ֆոկյան, կոհերենտ, սեղմված ևն:

ՔՎԱՆՏԱՅԻՆ ՓՈՍ, քվանտ. համակարգ, որտեղ մասնիկների շարժումը մի ուղղությամբ սահմանափակված է պոտենցիալ փոսով: Մյուս 2 ուղղություններով մասնիկների շարժումն ազատ է, և էլեկտրոն. գազը Ք. փ–ում երկչափ է: Որպես Ք. փ.՝ օգտագործում են հետերոկառուցվածքով կիսահաղորդիչը (նեղ արգելված գոտիով կիսահաղորդչի բարակ շերտը տեղադրում են ավելի լայն արգելված գոտիով 2 կիսահաղորդիչների շերտերի միջև), որտեղ լիցքակիրները սահմանափակող պոտենցիալի դերը կատարում է արգելված գոտու փոփոխ. լայն–յունը:

ՔՎԱՆՏԱՅԻՆ ՔԻՄԻԱ, տես. քիմիայի բաժին, որտեղ քիմ. միացությունների կառուցվածքը, հատկությունները, ռեակցիոնունակությունը, քիմ. ռեակցիաների կինետիկան և մեխանիզմները դիտարկվում են *քվանտային մեխանիկայի* պատկերացումների հիման վրա: Ուսումնասիրվող օբյեկտների և շարժընթացների բարդությունը բերում է Ք. ք–ում հաշվարկման մոտավոր եղանակների (մոլ. օրբիտալների եղանակ) կիրառման անհրաժեշտությանը:

ՔՎԱՆՏԱՅԻՆ ՔՐՈՄՈԴԻՆԱՄԻԿԱ [< *քրոմա...* և (*էլեկտրա*) *դինամակա*], քվարկային և գլուոնային դաշտերի ուժեղ փոխազդեցության քվանտադաշտ. տեսություն, երր այդ փոխազդեցությունն իրականացվում է գլուոնների (որոնք քվանտ. էլեկտրադինամիկայի *ֆոտոնների* նմանակն են) փոխանակության եղանակով: Ի տարբերություն ֆոտոնների՝ գլուոնները փոխազդում են միմյանց հետ, ինչը հանգեցնում է մասնավորապես *քվարկների* և գլուոնների միջև փոխազդեցության ուժի աճին, երբ նրանք սկսում են հեռանալ իրարից: Ենթադրվում է, որ հենց այդ հատկությունն է բացատրում միջուկ. ուժերի կարճազդեցությունը և ազատ քվարկների ու գլուոնների բացակայությունը բնության մեջ: Ք. ք. նկարագրում է ուժեղ փոխազդեցությունը *հադրոնների* միջև և բացատրում քվարկներն ու հադրոններն իրար կապող ուժերի բնույթը:

ՔՎԱՆՏԱՅԻՆ ՕՊՏԻԿԱ, օպտիկայի բաժին. ուսումնասիրում է լուս. դաշտերի (ֆոտոնների հոսքերի) վիճակագր. հատկությունները և այդ հատկությունների քվանտ. դրսևորումները՝ լույսի ու նյութի փոխազդեցություններում:

ՔՎԱՏԵՐՆԻՈՆ (լատ.՝ quaterni – չորսական), կոմպլեքս թվի ընդհանրացված հասկացությունը: Ք. ունի a + bi + cj + dk տեսքը, որտեղ a, b, c, d–ն իրական թվեր են, իսկ i, j, k–ն՝ 3 հատուկ միավորներ՝ կեղծ միավորների նման: Ք–ի համար ճշմարտացի են գործողության բոլոր օրենքները՝ բացի բազմապատկման կոմուտատիվությունից:

ՔՎԱՏԵՐՈՆ (Quateronum), սրտի պսակ. անոթները լայնացնող և զարկերակ. արյան ճնշումն իջեցնող դեղանյութ: Սինթեզվել և առաջարկվել է ՆՕՔԻ–ում: Օգտագործվում է կրծք. հեղձուկի, ստամոքսի և 12–մատնյա աղիի խոց. և հիպերտոնիկ հիվանդությունների բուժման համար:

ՔՎԱՐԵՆԳԻ (Quarenghi) Ջակոմո (1744–1817), իտալացի ճարտ.: 1779–ից Ռուսաստանում նախագծել է շենքեր, որոնց բնորոշ են հատակագծ. և ծավալ. հստակ, հանդիսավոր, պարզ լուծումները (Ալեքսանդրյան պալատ, 1792–96, Ցարսկո–

յե Սելոյում, Հատկացումների բանկ, 1783–90, Էրմիտաժի թատրոն, 1783–87, Սմոլնիի ինստ., 1806–08, բոլորը՝ Ս. Պետերբուրգում):

ՔՎԱՐԿ-ԳԼՈՒՈՆԱՅԻՆ ՊԼԱԶՄԱ, ուժեղ փոխազդող նյութի վարկած. վիճակ, որը բնութագրվում է գույնի պահպանության բացակայությամբ: Այդ վիճակում «գունավոր» քվարկները և գլուոնները, որոնց «գերեվարել» են հադրոնները, ազատվում են և որպես քվազիազատ մասնիկներ տարածվում են ողջ ծավալում. առաջանում է «գունահաղորդականություն»: Ժամանակակից պատկերացումների համաձայն՝ այդ վիճակն առաջանում է բարձր ջերմաստիճաններում կամ հավասարակշռված հադրոնային նյութի մեծ բարիոնային խտության դեպքում: Բնական պայմաններում Ք-գ. պ. ըստ երևույթին գոյություն է ունեցել միայն ***Մեծ պայթյունից*** հետո՝ առաջին 10^{-5} վ-ների ընթացքում: Չի բացառվում որ Ք-գ. պ. գոյություն ունի առավել զանգվածեղ ***նեյտրոնային աստղերի*** միջուկում:

ՔՎԱՐԿՆԵՐ, վարկած. հիմնարար մասնիկներ, որոնցից, ըստ ժամանակակից պատկերացումների, կազմված են բոլոր ***հադրոնները*** (բարիոնները՝ 3 Ք-ից, մեզոնները՝ Ք-ից և հակաքվարկներից): Ք. ունի 1/2 սպին, 1/3 բարիոնային լիցք, –2/3 էլ. լիցք և +1/3 պրոտոն. լիցք, նաև յուրահատուկ քվանտ. թիվ՝ «գույն»: Փորձնականորեն (անուղղակիորեն) հայտնաբերվել են 6 տեսակի («բույրերի») Ք.՝ u, d, s, c, b, t: Ազատ վիճակում Ք. չեն դիտվել:

ՔՎԱՐՑ (գերմ.՝ Quarz), միներալ: Հայտնի են սիլիցիումի երկօքսիդի՝ SiO_2-ի 2 բյուրեղ. ձևափոխություններ՝ վեցանիստ Ք. (a–Ք.) և եռանիստ Ք. (b–Ք.): Ք-ի բյուրեղները հաճախ ունեն ձգված տեսք: Անգույն է, կաթնասպիտակ կամ գորշ: Կարծր.՝ 7, խտ.՝ 2,65 $գ/սմ^3$: ՀՀ–ում տարածված է Արարատի, Լոռու, Տավուշի, Վայոց ձորի մարզերում, ԼՂՀ-ում՝ Մարտակերտի շրջանում: Օգտագործում են մաքուր սիլիցիում ստանալու նպատակով, իսկ թափանցիկ, գունազարդ տարբերակները՝ ոսկերչ. գործում: Քվարց. ավազները կարևոր հումք են խեցեգործ. և ապակու արտադր-յան համար:

ՔՎԱՐՑԱՅԻՆ ԳԵՆԵՐԱՏՈՐ, էլ. տատանումների սակավահզոր գեներատոր՝ ինքնագրգռումով, որի տատանող. համակարգում կա քվարց. պիեզոէլ. ռեզոնատոր: Բնութագրվում է գեներացված տատանումների հաճախության մեծ կայունությամբ, որը պայմանավորված է քվարցե ռեզոնատորի մեծ բարորակությամբ (10^5–10^7): Ք. գ. օգտագործում են տարբեր ռադիոընդունիչ սարքերում (որպես առաջատար գեներատոր), քվարցային ժամացույցներում, այն կարող է ծառայել որպես ժամանակի չափանմուշ և հաճախականության չափորոշիչ: Գեներացված տատանումների հաճախականությունը մի քանի *կՀց*-ից մինչև 100 *ՄՀց* է:

ՔՎԱՐՑԱՅԻՆ ԺԱՄԱՑՈՒՅՑ, սարք, որը բաղկացած է ***քվարցային գեներատորից***, հաճախության բաժանարարից (հնարավորություն է տալիս ստանալու ճշգրիտ ժամանակի ՑՀ ազդանշաններ) և իմպուլսների հաշվիչից: Ք. ժ-ով չափում են ժամանակի հատվածները՝ 10^{-10} հարաբեր. սխալով:

ՔՎԱՐՑԻՏ, փոխակերպային ապար՝ կազմված հիմնականում քվարցից (SiO_2): Բացի քվարցից՝ հաճախ հանդիպում են նաև ուրիշ միներալներ, ըստ որոնց էլ առանձնացվում են Ք-ի հատուկ տեսակներ՝ փայլար., նռնաքար. ևն: Ք-ի առաջացումը կապված է փոխակերպման ընթացքում ավազաքարերի վերաբյուրեղացման հետ: Երկաթ. (մագնետիտ.) Ք-ները երկաթի արժեքավոր հանքանյութ են: Օգտագործում են շին-յան մեջ: Տարածված է ՀՀ Արարատի, Լոռու, Տավուշի, Վայոց ձորի մարզերում և ԼՂՀ Մարտակերտի շրջանում:

ՔՎԵԲԵԿ (Quebec), ք. Կանադայում, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը, նվիևգստ Սր Լավրենտիոս գետի ափին: Բն.՝ 676,9 հզ. (2010): Ունի օդանավակայան: Գործում է Կանադայի տեխնոպարկը (օպտիկայի, էլեկտրոնիկայի, կենսատեխնոլոգիաների բնագավառի ԳՀ աշխ-ներ): Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է: Հիմնադրվել է 1608–ին:

ՔՎԻՆԿԵ (Quincke) Հենրիխ Իրենիուս (1842–1922), գերմանացի բժիշկ: Հիմն. աշխ-ները վերաբերում են ողնուղեղային հեղուկի շրջանառությանն ու փոփոխություններին՝ տարբեր հիվանդությունների ժամանակ: Նկարագրել է մաշկի, ենթամաշկ. թաղանթանյութի, լորձաթաղանթի, հաճախ նաև՝ դեմքի այտուցի (Ք-ի այտուց) առաջացումը: Պահպանվում է մի քանի ժամից մինչև մի քանի օր, ալերգիայի հետևանք է:

Առաջինն է կիրառել գոտկատեղի ծակումը (1890, կոչվել է նրա անունով) կամ գոտկատեղ. պունկցիան՝ լիքվորի ուսումնասիրման և ողնուղեղային անզգայացման, ինչպես նաև ուղեղի թաղանթի բորբոքման բուժման նպատակով իմուն. շիճուկի ներարկման համար:

ՔՎԻՆԿԵԻ ԱՅՏՈՒՑ, մաշկի, ենթամաշկ. բջջանքի, լորձաթաղանթի հանկարծակի առաջացող օրգ. այտուց (հաճախ՝ դեմքի), որը պահպանվում է մի քանի ժամից մինչև մի քանի օր: Նկարագրել է գերմանացի բժիշկ Հ. Քվինկեն 1882–ին: ***Ալերգիայի*** դրսևորումներից է:

ՔՎԻՆՏԷՍԵՆՑԻԱ, (լատ.՝ quinta essentia – հինգերորդ էություն), հիմք, որևէ բանի էությունը, անտիկ բնափիլ-յան մեջ՝ ***եթերը*** (հասկացությունը ներմուծել է Արիստոտելը) կամ 5–րդ տարրը (տարերք), որը հակադրվել է 4 երկր. տարրերին (ջուր, հող, օդ, հուր): Հետագայում Ք. հասկացվել է որպես նրբագույն սուբստանց, բոլոր տարրերի ծաղկաքաղ (***Պարացելս***):

ՔՎԻՆՏԻԼԻԱՆՈՍ (Quintilianus) Մարկոս Ֆաբիոս (մոտ 35–96–ից հետո), հռոմեացի հռետոր և հռետոր. արվ-ի տեսաբան: «Հռետորի կրթության մասին» տրակտատն անտիկ հռետորության մասին պահպանված միակ ամբողջ. ձեռագիրն է, որտեղ արժեքավոր տեղեկություններ կան հուն. պատմության և հռոմ. գրկ-յան մասին:

ՔՎԻՆՏԻԼԻՈՆ (ֆրանս.՝ quintillion), 1-ով և 18 զրոներով պատկերվող թիվ, այսինքն՝ 10^{18}: Որոշ երկրներում Ք. 10^{30} թիվն է:

ՔՎԻՇԱՓՈՐ, *Քուիշափոր*, *Գուզպրե* անգ-ի 10–րդ գվո–ը, վարչ. կենտրոնը՝ Քվեբ:

ՔՎՈՏԱ, (միջնադար. լատ.՝ quota – մաս), 1. կարտելի մասնակիցների բաժինն արտադրանքի արտադր-յան, իրացման կամ արտահանման մեջ, համապատասխան որի՝ նրանց միջև բաշխվում է շահույթը: 2. Հարկվող միավորից գանձվող հարկի մեծությունը: 3. Թույլատրելի ապրանքի (օր.՝ ներմուծման Ք.) բաժինը, մասը, նորման: 4. ԱՄՀ-ի անդամ երկրներին հատկացվող միջոցների հաստատված ծավալ:

ՔՎՈՐՈՒՄ, որևէ մարմնի ժողովում կամ նիստում օրենքով կամ կանոնադրությամբ սահմանված մասնակիցների նվազագույն քանակը, որն անհրաժեշտ է որոշումներն իրավազոր ճանաչելու համար:

ՔՐԱՄ (Cram), **Կրամ**, Դոնալդ Ջեյմս (1919–2001), ամերիկացի քիմիկոս-օրգանիկ: Աշխ-ները վերաբերում են տարածաքիմիային և մակրոտարացիկլ. միացությունների (կրաուն–եթերներ) քիմիային:

Նորելյան մրց. (1987, Ժ. Մ. ***Լենի*** և Չ. ***Պեդերսենի*** հետ):

ՔՐԱՄ Ջորջ (1822–1914), չիպսի հայտնագործողը: Վարկածներից 1-ի համաձայն՝ շերտատած–չորացրած կարտոֆիլը նրա ջանքերով ճաշացանկ է մտցվել 1853–ին Սարատոգա ք–ում (ԱՄՆ)՝ «Սարատոգայի չիպսեր» անունով:

ՔՐԱՄ Ջորջ (ծ. 1929), ամերիկացի կոմպոզիտոր: Երաժշտության հնարավորությունների «տեխնիկական ընդլայնման», պարտիտուրների գրաֆիկ. ձևավորման, գործիքային թատրոնի ջատագով: Պուլիցերյան (1968), «Գրեմմի» (2001) մրց-ներ:

ՔՐԱՄԵՐ (Kramer) Սեմյուել Նոյ (1897–1990), ամերիկացի հրեա շումերագետ: Հետազոտել և թարգմանել է շումեր. առասպելները, էպիկ. և այլ գր. տեքստեր, Ուր-Նամմուի, Լիպիտ-Իշտարի օրենքները, ուսումնասիրել է պատմությունը ևն («Պատմությունն սկսվում է Շումերից», 1965):

ՔՐԱՄԵՐ Սթեֆլի (1913–2001), ամերիկացի կինոռեժ.: Նկարահանել է «Չխոնարհելով գլուխները» (1958), «Վերջին ափին» (1959), «Նյուրնբերգյան դատավարություն» (1961), «Այս խելակորույս, խելակորույս, խելակորույս աշխարհը» (1963), «Հիմարների նավը» (1965), «Օկլահոման ինչպես որ կա» (1973), «Դոմինոյի սկզբունքը» (1977) և այլ ֆիլմեր:

ՔՐԱՅՍԹՉԵՐՉ (Christchurch), ք. Նոր Զելանդիայի Հվ. կղզում: Բն.՝ 341,4 հզ. (2014): Նախանվինգստ է (Լիթելթոն) Խաղաղ օվկ-ի ափին: Ունի օդանավակայան:

ՔՐԱՖԹ-Ս (Crafts) Ջեյմս Մեյսոն (1839–1917), ամերիկացի քիմիկոս: Բացահայտել է (1877, Շ. ***Ֆրիդելի*** հետ) արոմատիկ ածխաջրածինների ալկիլման ևացիլման եղանակը (Ֆրիդել–Քրաֆթսի ռեակցիա):

ՔՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, հնագույն նմուշները վերաբերում են VII դ–ին (անհայտ հեղինակի արամեատառ պոեմի մի հատված, Փիրե Շալիարի արաբատառ «Խրատագիրք»–ը): X–XII դդ–ում հս. քրդ–ը (կուրմանջի) արմատավորվել է որպես միջնադարի գր. լեզու, զարգացել է պոեմի ժանրը: Այդ ժամանակաշրջանից հայտնի են բանաստեղծներ Ալի Թիրեմահին, Բաբա Թահիրը, Ալի Հարիրին, Շեյխ Ադին: XII դ–ում գր. դպրոց է հիմնադրել Մ. Զգիրին: XIII դ–ից հայտնի է Ս. Էֆենդու և Շեյխ Խալիդի, XIV դ–ում՝ Ֆ. Տայրանի («Շեյխ Սանան»), XV դ–ում՝ Մ. Բատենի («Զամբիլֆրոշ», «Երկունք») քնարերգությունը: Գեղ. արձակի տարրերով է հագեցած XVI դ–ի պատմագիր Շ. Բիթլիսիի «Շարաֆ-Նամե» երկը: XVII դ–ում Իրան. Քուրդիստանի Արդայան գվո–ում գուրանի բարբառի հիման վրա ձևավորված գր. հոսանքի ներկայացուցիչներից են Ա. Թախթին, Մ. Բեսարանին և ուր.: Միջնադարում քրդ. մշակույթի ամենահայտնի դեմքը բանաստեղծ, փիլ., լուսավորիչ Ահմեդե Խանին է (XVI–XVII դդ., «Մամ ու Զին» պոեմը,

«Նուբար» արաբ–քրդ. չափածո բառարան ևն): XVIII դ–ում ստեղծագործել են Կուբադին, Շաֆին և ուր., XIX դ–ում՝ Քուրդին (1809–1849), Սալիմը (1800–1866), Հաջի Քոյին (1815–1892), Հարիխը (1865–1909): Քաղ. երգիծանքի հայտնի դեմքը Շեյխ Ռ. Թալաբանին էր (1835–1909):

1920–ական թթ–ին ձևավորվել է քրդ. նորագույն գրկ–ը, որը սերտորեն կապվել է քրդերի ազգ–ազատագր. պայքարին (Ահմեդ–բեկ Համդի, Ջիվար, Ահմեդ Մուխթար–բեկ, Ջազարխուն, Ղադրիջան, Ա. Նուրին, Օ. Սաբրի և ուր.): Նորագույն գրկ–յան մեջ առանձնանում է գեղագիտ. հոչակագրի արժեք ունեցող Ա. Գորանիի (1904–1962) գործունեությունը: 1930–ական թթ–ին ձևավորվել է Ք. գ–յան նոր փուլ, որի աչքի ընկնող ներկայացուցիչներից էին Ա. Շամիլովը, Հ. Ջնդին, Ջ. Ջալիլը, Ա. Ավդալը և ուր.: 1950–60–ական թթ–ին ստեղծագործել են Շ. Հասանը, Մ. Ռաշիդը, Ֆ. Ուսուբը, Ս. Շամոն, Կ. Չաչանին, 1970–90–ական թթ–ին՝ Ղ. Քուրդոն, Օ. Ջալիլը, Կ. Միրզոն և ուր.:

Խ. Աբովյանը, Րաֆֆին, Վ. Փափազյանը, Հ. Թումանյանը, Ա. Իսահակյանը, Ս. Զորյանը, Հ. Քոչարը, Հ. Շիրազը և ուր. ստեղծագործ. սերտ կապեր են ունեցել քրդերի հետ: Այդ ավանդույթը շարունակվում է նաև մեր օրերում:

ՔՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ պետական, հիմնադրվել է 1937–ին Ապարանում՝ որպես շրջիկ պետ. թատրոն (1938–ից՝ Ալագյազ գ–ում): Խմբում՝ Մ. Ջանան (գեղ. ղեկ.), Յ. Նիկողոսյան (ռեժ.), դերասան–դերասանուհիներ Մ. Շամո, Ղ. Ռաշո, Ղ. Ագիտ, Ա. Հաջի, Ա. Սահակյան և ուր.: Բեմադրություններից են Գ. Սունդուկյանի «Պեպո», Ջ. Ջաբարլիի «Սևիլ», Հ. Ջնդիի «Մուրազ», Ս. Գինոսյանի «Միրաքի աղջիկը» և այլ գործեր: Փակվել է 1947–ին:

ՔՐԴԵՐ (ինքնանվանումը՝ քուրդ, քուրմանջ), ժողդ Հվ–արմ. Ասիայում, Քրդստանի հիմն. բնակչությունը: Ապրում են Թուրքիայում (14 մլն, 2010), Իրաքում (մինչև 7 մլն), Իրանում (մինչև 7 մլն), Սիրիայում (ավելի քան 1 մլն), Ադրբեջանում (150 հզ.), Վրաստանում (60 հզ.), ՀՀ–ում (շուրջ 45 հզ.): Ընդհ. թիվը՝ շուրջ 40 մլն: Լեզուն՝ *քրդերեն*: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են, կան շիա մահմեդականներ և քրիստոնյաներ: Հաճախ որպես Ք–ից առանձին ազգագր. հանրույթ առանձնացվում են *եզդիները*:

ՔՐԴԵՐԵՆ, *քրդերի* լեզուն: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի հնդիրան. ճյուղի հս–արմ. իրան. լեզուներին: Գրի հիմքում հայկ. (1921), լատ. և արաբ. (արտերկրում), ռուս. (1945–ից՝ ԽՍՀՄ–ում) այբուբենն է:

ՔՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **կրիմինալոգիա** (< լատ. crimen – հանցագործություն և ...*լոգիա*), գիտ–յուն. ուսումնասիրում է հանցավորությունը, նրա պատճառները, հանցագործի անձնավորությունը, հանցավորության կանխարգելման եղանակներն ու միջոցները, դրա վերացման հեռանկարները ևն:

ՔՐԵԱԴԻՏՈՒԹՅՈՒՆ, **կրիմինալիտիկա** (լատ.՝ criminalis – հանցագործությանը վերաբերող), գիտ–յուն, որը մշակում է դատ. ապացույցների ձեռքբերման, հետազոտման և գնահատման հատուկ եղանակների, մեթոդների, միջոցների համակարգ:

ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, համակարգված օրենսդր. ակտ, որը կարգավորում է քր. գործերի քննության և լուծման կարգը երկրում: ՀՀ Ք. օ. ընդունվել է 1998–ին:

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, իրավունքի ճյուղ, որով սահմանվում են հանրության համար վտանգավոր արարքները (հանցագործությունները), դրանց կատարման համար պատիժներն ու նշանակման պայմանները:

ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, քր–իրավ. նորմերի համակարգված ակտ, որը սահմանում է հանրորեն վտանգավոր արարքներն ու դրանց համար նախատեսված պատիժները: ՀՀ Ք. օ. ընդունվել է 2003–ին:

ՔՐԵԲՍ (Krebs) Էդվին Ջերարդ (1918–2009), ամերիկացի կենսաքիմիկոս: Է. *Ֆիշերի* հետ բացահայտել է սպիտակուցները դարձելիորեն ֆոսֆորիլացնող մի շարք ֆերմենտներ, կատարել դաս. հետազոտություններ՝ բացահայտելու համար նրա դերը բջիջներում կենսաքիմ. ռեակցիաների կարգավորման մեխանիզմներում: Նորելյան մրց. (1992, Է. Ֆիշերի հետ):

ՔՐԹԻԿՅԱՆ (Քոթիկյան) Բարունակ Միքայելի (1824–1869), բժիշկ, կրթ. գործիչ, հրապարակախոս, բժշկ. ծառայության գնդ.: 1847–57–ին, որպես բժիշկ–ուղեկցող, շրջագայել է Թուրքիայի հայաբնակ գվո–ներում, կատարել պատվաստումներ: Տպավորություններն ու նոթերն ամփոփել է «Ճանապարհորդութիւն ի Բաբելոն ընդ Հայաստան» (հրտ.՝ 1876) աշխ–յան մեջ: Մասնակցել է արևմտահայերի Ազգ. սահմանադրության մշակման (1860) աշխ–ներին, ընտրվել Ազգ. ընդհ. ժողովի, Սահմանադր. առաջին ուս. խորհրդի ատենապետ: Կազմել է գրիպի, խոլերայի, տուբերկուլոզի վերաբերյալ տեղեկագրեր, կատարել թարգմ–յուններ (ֆրանս–ից):

ՔՐԻԶԱՆԹԵՄ (Chrysanthemum), **ոսկեծաղիկ**, աստղածաղկազգիների (բարդածաղկավորներ) ընտանիքի միամյա և բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 200 տեսակ: Բազմաթիվ սորտեր՝ ծաղիկների տարբեր ձևերով ու գունավորմամբ, օգտագործվում են գեղազարդիչ պարտիզագործության մեջ և կտրած ծաղիկներ ստանալու համար:

ՔՐԻԶՈԲԵՐԻԼ, միներալ՝ Al_2BeO_4: Խառնուրդների ձևով պարունակում է Fe^{3+}, Fe^{2+}, Cr: Առաջացնում է պրիզմաձև բյուրեղներ, հատիկավոր ագրեգատներ: Կանաչ է, դեղին, շագանակագույն, կարմիր, երբեմն՝ անգույն: Փայլը՝ ապակու: Կարծր. 8,5, խտ.՝ 3,75 *գ/սմ*³: Թափանցիկ, գունավորված տարբերակները, հատկապես՝ ալեքսանդրիտը, թանկարժեք քարեր են:

ՔՐԻԿ (Crick) Ֆրենսիս Հարրի Քոմփթոն (1916–2004), անգլիացի կենսաֆիզիկոս և գենետիկ: Ջ. *Ուոթսոնի* հետ ստեղծել է (1953) ԴՆԹ–ի կառուցվածքի (կրկնակի պարույրային) մոդելը, որը հնարավորություն է տվել բացատրելու նրա հատկություններն ու կենսբ. ֆունկցիաները և սկզբնավորել է մոլ. գենետիկան: Աշխ–ներ ունի նաև գենետիկ. կոդի վերծանման վերաբերյալ: Նորելյան մրց. (1962, Ջ. Ուոթսոնի և Մ. *Ուիլկինսի* հետ):

ՔՐԻՇՉՅԱՆ Էմիլ Մինասի (ծ. 1932), բժշկ. կիբեռնետիկայի բնագավառի մասնագետ: Կենսբ. գիտ. դ–ր (1986): Աշխ–ները վերաբերում են համակարգչ. տեխնոլոգիաների, էլեկտրոն. սարքավորումների և մաթ. մեթոդների մշակմանն ու ներդրմանը՝ տեխնիկայի, կենսբ–յան և բժշկության բնագավառներում: Ծրագրավորել է կենսբ. և բժշկ. մի շարք խնդիրներ:

ՔՐԻՍԹԻ (Christie) Ագաթա (1890–1976), անգլիացի գրող: Դետեկտիվ ժանրի վարպետ: Հեղինակ է «Պուարոն հետաքննում է» (1924), «Բուխարինների գաղտնիքը» (1925), «Ռոջեր Էքրոյդի սպանությունը» (1926), «Արևելյան ճեպընթացը» (1934, հայ.՝ 1971), «Դիակը գրադարանում» (1942), «Հաջողության ափը» (1948), «Թունավորված շունը» (1951), «Կարիբյան գաղտնիք» (1964), «Ճակատագրի դարպասներ» (1973) և այլ դետեկտիվ վեպերի, «Մեղադրանքի վկան», «Մկան թակարդ» (երկուսն էլ՝ 1954) և այլ պիեսների, նաև պատմվածքների:

ՔՐԻՍԻՊՈՍ (մ. թ. ա. մոտ 280–208/205), հույն փիլ., վաղ ստոիկության գլխ. համակարգողը: Աշակել է արտահայտությունների տրամաբ–յունը, ներմուծել երկակիության սկզբունքը:

ՔՐԻՍՅԱՆ Շավարշ Արամի (1883–1915), մարզ. գործիչ, խմբ.: 1911–15–ին՝ Կ. Պոլսի «*Մարմնամարզ*» թերթի հիմնադիր–խմբ.: 1914–ին հիմնադրել է *Հայ մարմնամարզական ընդհանուր միությունը*: Ք–ի նախաձեռնությամբ 1911–ին Կ. Պոլսում տեղի են ունեցել Հայկ. առաջին օլիմպ. խաղերը:

ՔՐԻՍՏԱՓՈՐ Ա. ՏԻՐԱՆԻՋՑԻ (ծ. թ. անհտ–545), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 539–ից: Հայտնի է նեստորականության և քաղկեդոնության դեմ պայքարով:

ՔՐԻՍՏԱՓՈՐ Բ ԱՊԱՀՈՒՆԻ, Ամենայն հայոց կաթողիկոս՝ 628–630–ին: Կաթողիկոս է ընտրվել *Թեոդորոս Ա. Ռշտունու* առաջադրմամբ: Մարզպան Վարազտիրոց Բագրատունու կեղծ մեղադրանքների պատճառով հրաժարվել է գահից: Կյանքի մնացած մասն անցկացրել է Մասյացոտն գվո–ի Ուղիք գ–ին մերձակա մենարանում:

ՔՐԻՍՏԱՖՈՐՅԱՆ Լևոն Շմավոնի (ծ. 1942), ճարտ.: Համահեղինակ է Երևանում՝ բարձրագույն մարզ. վարպետության դպրոցի (1972), ՀՀ կենտր. բանկի 3 մասնաշենքերի (2003), Երևանի «Էրեբունի» (1983), Գյումրիի (1982) օդանավակայանների, Թալինում՝ պետբանկի շենքի (1980) և այլ նախագծերի: Երիտասարդ ճարտ–ների ստեղծագործության (1977), «Տարվա լավագույն կառույց» (1984) համամիութ. ստուգատեսների դափնեկիր, «Բիենալե–87»–ի մրց. (Սոֆիա):

ՔՐԻՍՏԻԱՆ I (Kristian, Christian, Christiern, 1426–1481), Դանիայի (1448–ից), Նորվեգիայի (1450–ից) և Շվեդիայի (1457–64) թագավոր՝ Օլդենբուրգյան հարստությունից, Շլեզվիգի և Հոլշտեյնի հերցոգ (1460–ից):

ՔՐԻՍՏԻԱՆ II (Christian, 1481–1559), Դանիայի ու Նորվեգիայի (1513–23) և Շվեդիայի (1520–23) թագավոր՝ Օլդենբուրգյան հարստությունից: 1520–ին վերջին անգամ վերականգնել է դանիա–շվեդ. միությունը, հալածել նրա հակառակորդներին (տես *Ստոկհոլմյան արյունոտ բաղնիք*): Գահընկեց են արել դանիական իշխանները:

ՔՐԻՍՏԻԱՆ III (1503–1559), Դանիայի և Նորվեգիայի թագավոր (1534–ից)՝ Օլդենբուրգյան հարստությունից, Շլեզվիգ–Հոլշտեյնի հերցոգ: Քաղաքաց. պատերազմում հաղթել է գահընկեց արված *Քրիստիան II*–ի կողմնակիցներին: 1536–ին իր տիրույթներում իրականացրել է լյութերական *Ռեֆորմացիան*: Ք. III–ի օրոք Դանիան և Նորվեգիան միավորվել են մեկ միասն. պետության մեջ:

ՔՐԻՍՏԻԱՆ IV (1577–1648), Դանիայի և Նորվեգիայի թագավոր՝ 1588–ից (ինքնուրույն թագավորել է 1596–ից)՝ Օլդենբուրգյան հարստությունից: Զգտել է պահպանել և ամրապնդել դանիական գերիշխանությունը Բալթիկ ծովում, պատերազմել է Շվեդիայի դեմ (1611–13, 1643–45, ավարտվել է 1645-ի Բրեմսեբրուսյան հաշտությամբ), 1625–29-ին մասնակցել է *Տասներեքամյա պատերազմին* (անհաջող արշավանք Գերմանիա):

ՔՐԻՍՏԻԱՆ V (1646–1699), Դանիայի և Նորվեգիայի թագավոր (1670–ից)՝ Օլդենբուրգյան հարստությունից, Շլեզվիգ–Հոլշտեյնի հերցոգ: Փորձել է վերադարձնել Շվեդիայի կողմից գրավված հվ.-սկանդ. Սկոնե, Բլեկինգե և Հալանդ պրովինցիաները: Ք. V-ի օրոք ընդունվել են 1683-ի Դանիական և 1687-ի Նորվեգ. օրենքները, 1688-ին կազմվել է հող. կադաստր:

ՔՐԻՍՏԻԱՆ VI (1699–1746), Դանիայի և Նորվեգիայի թագավոր (1730–ից)՝ Օլդենբուրգյան հարստությունից, Շլեզվիգ–Հոլշտեյնի հերցոգ: 1733-ին գյուղացիների համար սահմանել է ռազմ. հաշվառման համակարգ, որը յուրօրինակ ճորտատիր. կախվածություն էր ենթադրում: 1734-ին Շվեդիայի հետ կնքել է պաշտպ. դաշինք:

ՔՐԻՍՏԻԱՆ VII (1749–1808), Դանիայի և Նորվեգիայի թագավոր (1766–ից)՝ Օլդենբուրգյան հարստությունից, Շլեզվիգ–Հոլշտեյնի հերցոգ: 1769–ից վատառողջ լինելու պատճառով փաստացի իշխանությունն անցել է նախարար Յ. Հ. Է. Բեռնստորֆին, հետագայում՝ թագավորի անձն. բժիշկ Յ. Ֆ. Ստրուենսեին, որը 1770–72-ին իրականացրել է մի շարք լուսավորչ. միահեծան բարեփոխումներ:

ՔՐԻՍՏԻԱՆ VIII (1786–1848), Նորվեգիայի (1814-ին) և Դանիայի (1839–ից) թագավոր՝ Օլդենբուրգյան հարստությունից: 1813–ից՝ Նորվեգիայի շտատհալտեր: Չի ճանաչել 1814-ի Քիլյան հաշտության պայմանագրով Նորվեգիայի անցումը Շվեդիայի ենթակայությանը: 1814-ին ընտրվել է Նորվեգիայի թագավոր, որին մեծ տեղությունները չեն ճանաչել: Նույն տարում հրաժարվել է նորվեգ. թագից: 1839-ին ժառանգել է դանիական գահը: Ճնշել է գյուղաց. և ազատ. շարժումները, ընդդիմացել Դանիայից Շլեզվիգ–Հոլշտեյնի բաժանմանը:

ՔՐԻՍՏԻԱՆ IX (1818–1906), Դանիայի թագավոր (1863–ից)՝ Շլեզվիգ–Հոլշտեյն–Զոնդերբուրգ–Գլյուքսբուրգների հարստությունից: 1864-ի գերմանա–դանիական պատերազմի հետևանքով Պրուսիային զիջել է Շլեզվիգը և Հոլշտեյնը: 1864-ին Իսլանդիային շնորհել է սահմանադրություն և ինքնակառավարում: Ստացել է «Եվրոպայի աներ» մականունը (ավագ դուստրը եղել է Բրիտանիայի թագավոր Էդուարդ VII-ի, կրտսերը՝ Ռուսաստանի կայսր Ալեքսանդր III-ի կինը):

ՔՐԻՍՏԻԱՆ X (1870–1947), Դանիայի (1912–ից) և Իսլանդիայի (1918–44-ին) թագավոր՝ Շլեզվիգ–Հոլշտեյն–Զոնդերբուրգ–Գլյուքսբուրգների հարստությունից: Մարիա Ֆեոդորովնայի զարմիկը: Ք. X-ի օրոք Հս. և Կենտր. (մի մասը) Շլեզվիգը վերադարձվել է Դանիային:

ՔՐԻՍՏԻԱՆ-ԺԱԿ (Christian-Jaque, Քրիստիան Մոդե, 1904–1994), ֆրանսիացի կինոռեժ.: Նկարահանել է «Պարմի մենաստանը» (1947), «Ֆանֆան-Տյուլպան» (1952), «Եթե աշխարհի բոլոր երիտասարդները» (1955), «Բաբետան գնում է պատերազմ» (1959), «Ծանրակշիռ ապացույցներ» (1963), «Նավթարդյունահանողները» (1971), «Ձո Գայար» (1975) և այլ ֆիլմեր:

ՔՐԻՍՏԻՆԱ Ավգուստա (Christina Augusta, 1626–1689), Շվեդիայի թագուհի (1632–54)՝ Վազա հարստությունից: Գուստավ II Ադոլֆի դուստրը: Ինքնուրույն կառավարել է 1644-ից: Ք.-ի օրոք Շվեդիան զգալիորեն ընդլայնել է իր տիրույթները՝ դառնալով եվրոպ. տերություններից մեկը: Զգտել է սահմանափակել ազնվականության իշխանությունը և Պետ. խորհուրդը (ռիկսռոդ) ենթարկել իրեն: 1654-ին թագը կամավոր զիջել է *Կառլ X*-ին, հեռացել է երկրից և ընդունել կաթոլիկություն:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ, համաշխ. 3 կրոնների (*բուդդայականության* և *մահմեդականության* հետ), որն ունի 3 հիմն. ուղղություն՝ կաթոլիկություն, ուղղափառություն, բողոքականություն (եկեղեցիների բաժանումը՝ 1054-ին): Ք.-ի հիմքում *Հիսուս Քրիստոսի*՝ որպես ստվածամարդու, փրկչի, եռամիասն. աստվածության երկրորդ անձի մարմնավորման մասին հավատն է: Հավատացյալներն աստված. բարեհաճությանն արժանանում են Ք-յան խորհուրդներին հաղորդվելով: Ք-յան դավանանքի աղբյուրն *Աստվածաշունչն* է, որում կարևորվում է Հայտնությունը, ինչպես նաև Հավատո հանգանակը: Ք. ծագել է I դ-ում Պաղեստինի հրեաների միջավայրում և անմիջապես տարածվել այլ ժողովուրդների շրջանում: Ք. պաշտոնապես պետական կրոն առաջին անգամ հռչակվել է Հայաստանում (301 թ-ին), IV դ-ում՝ Հռոմ. կայսրությունում, XIII դ-ում ողջ Եվրոպայում: Ներկայում ողջ աշխարհում քրիստոնյաների թիվը գերազանցում է 1 մլրդ-ը:

«ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ», կրոն., մշակութ., լրատվ. երկշաբաթաթերթ (1997–ից, Էջմիածին): Մայր աթոռ Սբ Էջմիածնի պաշտոն. հրտ-յուն: Խմբ-ներ՝ Կարեն Մաթևոսյան, Աստղիկ Ստամբոլցյան (2000–ից):

«ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ», թեմատիկ հանրագիտարան (2002). տպագրվել է քրիստոնեությունը Հայաստանում պետ. կրոն հռչակման 1700-ամյակի առթիվ («Հայկական հանրագիտարան. հրատարակչություն»): Ներկայացնում է Հայ եկեղեցու դավանանքը, դավանաբան. մտքի և եկեղեցու պատմությունը, հայ ժողդ-ի ավանդը քրիստ. քաղաքակրթության և համաշխ. մշակույթի մեջ: Գլխ. խմբ.՝ Հովհաննես Այվազյան, պատ. խմբ.՝ Արտաշես Ղազարյան:

ՔՐԻՍՏՈՍԱՏՈՒՐ, XV դ-ի գրիչ, մանրանկարիչ, կազմարար: Ղրիմում ծաղկել ու կազմել է իր ընդօրինակած մատյանները, որոնցից 3-ը (Ավետարան, Ճաշոց, Մանրուսում) Մոնդ-ում են (ձեռ. № 7686, 7434, 2387): Ք. վերջին անգամ հիշատակվում է 1449-ին՝ որպես Անտոնի վանքի վանահայր:

ՔՐԻՍՏՈՓՈՐՅԱՆ Տիգրան Լևոնի (1919–1973), վիրաբույժ, վնասվածքաբան-օրթոպեդ: Բժշկ. գիտ. դ-ր (1968), պրոֆ. (1970): Բժշկ. ծառայության մայոր: Աշխ-ները վերաբերում են Հայաստանում գղտ. վնասվածքների առաջացման պատճառներին ու դրանց կանխարգելման միջոցառումների կազմակերպմանը:

ՔՐՄՈՅԱՆ Սայթ (Գեղամ, 1922–1997), երգիչ (բաս): Հիմնականում ապրել է Նյու Յորքում, երգել «Գիլդ» և «Մետրոպոլիտեն օպերա» թատրոններում. երկացանկում՝ Վ. Ա. Մոցարտի «Առևանգում հարեմից», «Ֆիգարոյի ամուսնությունը», Շ. Գունոյի «Ֆաուստ», Ջ. Վերդիի «Սիմոն Բոկկանեգրա» և այլ օպերաների գլխ. դերերգեր: Համերգ. ծրագրում՝ դաս., ժամանակակից ամերիկ., նեգր., ռուս., հայկ. երգեր:

ՔՐՄՈՅԱՆ Մարատ Նորայրի (1936–2016), ճարտարագետ-էլեկտրիկ: Տեխ. գիտ. թեկնածու (1976): 1978–92-ին եղել է Գառնիի «Գրանիտ» լարորատոր ԿԲ-ի պետի և գլխ. կոնստրուկտորի տեղակալ: Աշխ-ները վերաբերում են տիեզ. սարքաշինության, ինքնաշխատ էլեկտրաչափիչ և կառավարման համակարգերի մշակման հարցերին: Մասնակցել է «Օրիոն», «Աստրոն», «Գլազար-1 և -2» տիեզ. աստղադիտակների ստեղծման աշխ-ներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1984):

ՔՐՄՈՒԹՅՈՒՆ, մինչմիաստված. կրոննեռում պաշտամունքի ծառայողների դաս: Ք-յանը նախորդել են կախարդները, հեքիմները, հմայողները ևն: Ուշնախնադար. հասարակարգում Ք-յան գործառույթները կատարել են ցեղերի առաջնորդները: Հին աշխարհի երկրներում Ք. սովորաբար եղել է առանձնաշնորհյալ խավ: Ք-յան գործունեության հետ է կապված պանթեոնների ձևավորումը, ասքերի պաշտոնականացումն ու գր. մշակումները:

Հայոց Ք-յան գոյության մասին գրել է Մովսես Խորենացին, տեղեկություններ կան Ագաթանգեղոսի և Հովհան Մամիկոնյանի «Պատմություններում»: Պահպանվել է, օր., Անուշավան Սոսանվերի անունը, որը հավանաբար եղել է քրմապետ, սոսու ծառերի տերևների սոսափյունով գուշակություններ արել ևն:

Հայոց արքունիքում եղել է «մեհյաննեռի սպասավորության» ծառայությունը, որը Վաղարշակ Արշակունու օրոք իրականացրել են Վահունիները:

ՔՐՈԹՈ (Kroto) Հարոլդ (ծ. 1939), անգլիացի քիմիկոս: Բացահայտել է (1985) ածխածնի նոր ձևափոխության՝ *ֆուլերենների* գոյությունը: Նոբելյան մրց. (1996, Ռ. *Քյոռլի* և Ռ. *Սմոլլիի* հետ):

ՔՐՈՄ (Chromium), Cr, տարրերի պարբեր. համակարգի VI խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 24, ա. զ.՝ 51,9961: Անվանումը՝ հուն. chroma – գույն, ներկ (միացությունների վառ գունավորման համար) բառից: Երկնագույն արծաթավուն մետաղ է, խտ.՝ 7,19 $գ/սմ^3$, $t_{հալ.}$՝ 1890°C: Օդում չի օքսիդանում: Գլխ. միներալները քրոմշպինելիդներն են: Ք. չժանգոտվող, թթվակայուն, հրակայուն պողպատների (նիքրոմներ, քրոմալներ, ստելիտ) և համաձուլվածքների բաղադրիչ է: Կիրառում են քրոմապատման համար: Ք-ի միացություններն օքսիդիչներ են, անօրգ. գունանյութեր, դարաղանյութեր:

ՔՐՈՄԱԹԹՈՒՆԵՐ, ազատ վիճակում չանջատված թթուներ՝ $xCrO_3 \cdot H_2O$ ընդհ. բանաձևով: Առավել կարևոր են քրոմական թթուն՝ H_2CrO_4՝ միջին ուժգնության, երկքրոմական թթուն՝ $H_2Cr_2O_7$՝ առավել ուժեղ, և աղերը, համապատասխանաբար՝ քրոմատներ և երկքրոմատներ:

ՔՐՈՄԱԼ (< *քրոմ* + *ալյումին*), Fe-ի (հիմքը) համաձուլվածքը Cr-ի (17–30 %) և Al-ի (4,5–6 %) հետ: Ունի բարձր կրակակայունություն և տեսակարար էլ. դիմադրություն: Ք-ից պատրաստում են էլ. վառարանների

և սարքերի տաքացնող տարրեր: Աշխ. ջերմաստիճանը՝ մինչև ~1400ºC:

ՔՐՈՄԱՆՄԻԼ (< *քրոմ, մանգան – սիլիցիում*), միջին լեգիրված կառուցվածք. պողպատ, պարունակում է քրոմ, մանգան, սիլիցիում (մոտ 1 %): Ամուր է և պլաստիկ: Ք–ից պատրաստում են ինքնաթիռաշին. և մեքենաշին. կառուցվածքներ:

ՔՐՈՄԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ, օքսիդիչների որոշման տիտրաչափ. եղանակ՝ հիմնված $Cr^{3+} + e \rightarrow \leftarrow Cr^{2+}$ ռեակցիայի վրա: Կիրառում են Cu(II), Ag(I), Au(III), Hg(II) մետաղների այլ կատիոնների, ազո–, նիտրա–, նիտրոզոմիացությունների, եռֆենիլմեթանային ներկանյութերի որոշման համար:

ՔՐՈՄԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ, քրոմատոգրաֆիա (< հուն. chroma, սեռ. հոլ.՝ chromatos – գույն և *...գրաֆիա*), խառնուրդների բաժանման և վերլուծության եղանակ. հիմնված է դրանց բաղադրիչների 2 ֆազերում՝ անշարժ և շարժուն (էլյուենտ), բաշխման տարբերության վրա: Կախված էլյուենտի ագրեգատ. վիճակից՝ տարբերում են գազ. և հեղուկ. Ք.: Ք–ական բաժանումը կատարում են սորբենտ պարունակող խողովակներում (աշտարակ. Ք.), մի քանի տասնյակ *մ* երկ–յամբ մազանոթներում, որոնց պատերին նստեցված է սորբենտ (մազանոթ. Ք.), սորբենտի շերտով պատված թիթեղների վրա (նրբաշերտ Ք.), թղթի վրա (թղթի Ք.): Ք. օգտագործում են լաբորատորիաներում և արդ–յան մեջ՝ արտադր–յան հսկման և մաքուր նյութերի անջատման համար:

ՔՐՈՄԱՏԱԶԱՆԳՎԱԾԱՄՊԵԿՏՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ, գլխավորապես օրգ. նյութերի խառնուրդների վերլուծության և հեղուկի ծավալում նյութի հետքային քանակների որոշման հիբրիդային եղանակ, որը ներառում է *քրոմատագրությունը* (խառնուրդը բաղադրիչների բաժանելու համար) և զանգվածասպեկտրաչափությունը (նյութի նույնականացման, կառուցվածքի որոշման և որակ. վերլուծության համար): Օգտագործում են կառուցվածքավերլուծ. հետազոտությունների ժամանակ՝ օրգ. քիմիայում, նավթաքիմիայում, կենսաքիմիայում, բժշկության, դեղագիտ–յան մեջ, շրջակա միջավայրի պահպանության համար:

ՔՐՈՄԱՏԱՅԻՆ ԲԵՎԵՌԱՑՈՒՄ, գունային բևեռացում, երկբեկող միջավայրով անցած սպիտակ լույսի փնջի գունավորումը: Առաջանում է բևեռացված ճառագայթների *ինտերֆերենցիայի* հետևանքով:

ՔՐՈՄԱՏԻԴ (< *քրոմ*... և հուն.՝ eidos – տեսակ), նուկլեոպրոտեիդային 2 թելերից մեկը, որոնք գոյանում են բջիջների կիսման կենսընթացում՝ քրոմոսոմների կրկնապատկման դեպքում: Բաժանումից առաջացած Ք–ները կոչվում են դուստր քրոմոսոմներ:

ՔՐՈՄԱՏԻՆ, բջջ. կորիզի նյութ (նուկլեոպրոտեին), որը կազմում է *քրոմոսոմի* հիմքը. ներկվում է հիմն. ներկանյութերով: Բջջի կիսման ընթացքում Ք. խտանում է՝ առաջացնելով հոծ կառուցվածքներ՝ քրոմոսոմներ, որոնք տեսանելի են մանրադիտակով: Տարբերում են հետերոքրոմատին և էուքրոմատին:

ՔՐՈՄԱՏՆԵՐ, քրոմական՝ H_2CrO_4–ի (VI), քրոմային՝ $HCrO_2$–ի (III կամ քրոմիտներ), և երկքրոմային՝ $H_2Cr_2O_7$–ի թթուների աղերը: Ուժեղ օքսիդիչներ են: Կալիումի և նատրիումի Ք. լուծվում են ջրում, կիրառվում են որպես խածատանյութ ներկման ժամանակ, փայտանյութը պահածոյացնող, կաշին դաբաղող նյութեր:

ՔՐՈՄԱՏՈՖՈՐՆԵՐ (< *քրոմ*... և հուն.՝ phoros – կրող), 1. **գունակիրներ**, տես *Գունակային բջիջներ*: 2. Քլորոֆիլ, կարոտինոիդներ և այլ գունակներ պարունակող ջրիմուռների մեծամասնության և լուսասինթեզող բակտերիաների բջիջների ներառուկներ: Ապահովում են լուսասինթեզը:

ՔՐՈՄԱՖԻՆԱՅԻՆ ԲՋԻՋՆԵՐ (< *քրոմ*... և լատ.՝ affinis – ազգակից), մարդու և ողնաշարավոր կենդանիների մակերիկամների ուղեղ. նյութը կազմող բջիջներ: Կան նաև սիմպաթիկ նյարդ. համակարգի հյուսակներում և հանգույցներում: Արտադրում են *ադրենալին* և *նորադրենալին* հորմոններ:

ՔՐՈՄԵԼ (< *քրոմ* և *նիկել*), նիկելի հիմքով համաձուլվածք քրոմի (8,5–10 %) և կոբալտի (1 %) հետ: Պատրաստում են ջերմազույգեր (Ք.՝ ալյումել, Ք.՝ կոպել), փոխհատուցման հաղորդալարեր:

ՔՐՈՄԻ ՀԱՄԱՁՈՒԼՎԱԾՔՆԵՐ, քրոմի հիմքով համաձուլվածքներ: Լեգիրման համար օգտագործում են W, Ni, Co, Ti և այլ տարրեր: Ունեն բարձր մեխ. հատկություններ, կրակակայունություն, կոռոզիակայունություն՝ ագրեսիվ միջավայրերում: Բարձրաքրոմ. համաձուլվածքները (35–45 %) լավ եռակցվում են, դրանցից պատրաստված շինվածքները պաշտպ. պատվածքի կարիք չունեն:

ՔՐՈՄԻ ՕՔՍԻԴՆԵՐ, *քրոմի* միացությունները թթվածնի հետ՝ օքսիդ՝ CrO, սեսքվիօքսիդ՝ Cr_2O_3, երկօքսիդ՝ CrO_2, և եռօքսիդ՝ CrO_3: Cr_2O_3–ը մուգ կանաչ բյուրեղներ են, մետաղագործ. վառարանների աղյուսապատման, հղկիչ և կիպահողկիչ մածուկների բաղադրիչ, գունանյութ՝ ապակու և խեցեղենի համար, կատալիզորդ: CrO_3–ը մուգ կարմիր խոնավածուծ բյուրեղներ են, ուժեղ օքսիդիչ, կիրառում են քրոմապատման, քրոմ ստանալու, յուղերի, ճարպերի սպիտակեցման, որպես խածատանյութ՝ կտորեղենի ներկման, գունանյութ՝ խեցեղենի, ապակու, ռետինի համար:

ՔՐՈՄՈ..., **քրոմա**... (հուն.՝ chroma (chromatos) – գույն), բարդ բառերի բաղադրամաս. ցույց է տալիս գույնին և քրոմ. մետաղին վերաբերելը:

ՔՐՈՄՈՄԱԳՆԵԶԻՏ, հրահեստ նյութ, պատրաստվում է քրոմիտի (40 %–ից ոչ պակաս) և թրծած մագնեզիտի խառնուրդից: Ունի բարձր հրահեստություն (2000ºC բարձր): Կիրառում են սև մետաղագործության մեջ, ցեմենտաթրծման վառարաններում:

ՔՐՈՄՈՊԼԱՍՏՆԵՐ, բուս. բջիջների օրգանոիդներ, պարունակում են գունակներ, առավելապես կարոտինոիդներ, որոնք աշնան. տերևները, հյութալի պտուղները, գազարի արմատները գունավորում են կարմիր, դեղին և նարնջագույն:

ՔՐՈՄՈՊՐՈՏԵԻՆՆԵՐ, բարդ սպիտակուցներ, որոնք պարունակում են պարզ սպիտակուցին միացած գունավոր ոչ սպիտակուց. բաղադրիչներ: Մասնակցում են լուսասինթեզին բջջ. և ամբողջ օրգանիզմի շնչառությանը, թթվածնի և ածխաթթու գազի տեղափոխմանը օքսիդավերականգնման ռեակցիաներում և լուսա– ու գունաքնկալմանը:

ՔՐՈՄՈՍՈՄԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱԶՄ, օրգանիզմի յուրաքանչյուր բջջում պարփակված *քրոմոսոմների* ամբողջությունը: Դիպլոիդ օրգանիզմների սեռ. բջիջներում պարունակվում է հապլոիդ (1 զույգ) Ք. հ., որտեղ յուրաքանչյուր տիպի Ք. հ. հանդիպում է եզակի թվով, տեսակների մեծամասնության մարմնային բջիջների մեծ մասում՝ դիպլոիդ (կրկնակի) Ք. հ., որում միշտ կան յուրաքանչյուր տիպի 2–ական քրոմոսոմներ (զույգ կամ հոմոլոգ քրոմոսոմներ, որոնցից մեկը ծագել է մայր. օրգանիզմից, մյուսը՝ հայր.): Օրգանիզմների յուրաքանչյուր տեսակ օժտված է առանձնահատուկ և կայուն Ք. հ–ով:

ՔՐՈՄՈՍՈՄԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ժառանգ. հիվանդություններ, որոնք պայմանավորված են քրոմոսոմների թվի կամ ուրվագծի փոփոխություններով, հաճախ կարիոտիպում հոմոլոգների որևէ զույգի մեկ քրոմոսոմի բացակայությամբ (մոնոսոմիա) կամ հոմոլոգների զույգին լրացուցիչ 3–րդ քրոմոսոմի ավելացմամբ:

ՔՐՈՄՈՍՈՄՆԵՐ (< *քրոմո*... և հուն.՝ soma – մարմին), բջջի կորիզի ԴՆԹ պարունակող կառուցվածք. տարրեր, որոնցում ներառված է օրգանիզմի ժառանգ. տեղեկույթը: Ք–ում գծային կարգով տեղակայված են *գեները*: Ք–ի ինքնակրկնապատկումը և օրինաչափ տեղաբաշխումը (ըստ դուստր բջիջների) բջջի կիսման ժամանակ ապահովում է օրգանիզմի ժառանգ. հատկանիշների փոխանցումը սերնդից սերունդ: Ք. պարզորոշ կառուցվածքների տեսքով նկատելի են (մանրադիտակի տակ) միայն բջիջների կիսման ժամանակ:

ՔՐՈՄՈՖՈՐՆԵՐ, գունակիրներ, օրգ. մոլներում չհագեցած կապերով ատոմ. խմբավորումներ (N=N, NO_2, NO, CH=CH, C=O), որոնք պայմանավորում են դրանց գույնը:

ՔՐՈՄՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, մետաղօրգ. միացություններ, որոնցում քրոմի ատոմն անմիջականորեն միացած է ածխածնի ատոմին: Կիրառում են որպես կատալիզորդներ օլեֆինների պոլիմերման և օլիգոմերման ժամանակ, մետաղ. և օքսիդ. թաղանթների ու ծածկերի ստացման համար:

ՔՐՈՆԻՆ (Cronin) Արչիբալդ Ջոզեֆ (1896–1981), անգլիացի գրող: 1930–ական թթ–ից՝ վտարանդի: Հեղինակ է «Բրոուդիի ամրոցը» (1931), «Աստղերը նայում են ներքև» (1935), «Միջնաբերդ» (1937), «Խաչակիրի հուշարձանը» (1956) և այլ վեպերի, «Յուպիտերը ծիծաղում է» (1940) և այլ պիեսների, նաև ինքնակենսագր. վիպակների:

ՔՐՈՆԻՆ Ջեյմս Ուոթսոն (1931–2016), ամերիկացի ֆիզիկոս: Աշխ–ները վերաբերում են միջուկ. և տարր. մասնիկների ֆիզիկային: Հայտնաբերել է (1964, Վ. *Ֆիտչի* հետ) CP–ինվարիանտության խախտումը չեզոք K–մեզոնի տրոհման ժամանակ: Նոբելյան մրց. (1980, Վ. Ֆիտչի հետ):

ՔՐՈՆՈ... (հուն.՝ chronos – ժամանակ), բարդ բառերի մաս. ցույց է տալիս նրանց՝ ժամանակին վերաբերելը (օր. քրոնաքսիա):

ՔՐՈՆՈԿԵՆՈԶԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, կենսբյան բաժին. ուսումնասիրում է կենսբ. ռիթմերը, կենսբ. տարբեր կենսընթացները (առավելապես՝ փուլային)՝ ժամանակի ընթացքում: Ծագել է XX դ–ում:

ՔՐՈՆՈՍ (հուն.՝ Chronos), ժամանակի անձնավորումը հուն. դից–յան մեջ: Ըստ օրփեոսականների՝ Ք. աշխարհի հիմքերից է՝ Զևսին և Երկրին հավասար: Կրակը, օդը և ջուրը եղել են Ք–ի ծնունդ: Անունների նմանության պատճառով ոմանք Քրոնոսին նույնացրել են Կրոնոսի հետ: Նոր ժամանակի արվ–ում Ք. սովո–

րաբար պատկերվել է գերանդին ձեռքին ծերունու տեսքով:

ՔՐՈՈՒՖՈՐԴ (Crawford) Ջոան (Լյուսիլ ֆեյ Լյուսեր, Le Sueur, 1905–1977), ամերիկացի դերասանուհի: Նկարահանվել է «Վճարված է», «Անձրև», «Միլդրեդ Փիրս», «Ինչ է եղել Բեյի Ջեյնի հետ» և այլ ֆիլմերում: «Օսկար» մրց. (1946):

ՔՐՈՈՒՖՈՒՏ ՀՈՋԿԻՆ (Crowfoot Hodgkin) Դորոտի (1910–1994), անգլիացի քիմիկոս-կենսաքիմիկոս: ՌԳԱ արտ. անդամ (1976): Ռենտգենակառուցվածք. վերլուծության եղանակով ուսումնասիրել է ֆիզիոլոգիապես ակտիվ բարդ միացությունների կառուցվածքը, հաստատել է պենիցիլինի (1949), B_{12} վիտամինի (1956) կառուցվածքները: Նոբելյան (1964), Լենինյան միջազգ. (1987) մրց-ներ:

ՔՐՏԻՆՔ, անգույն հեղուկ, որն արտադրվում է քրտնագեղձերում: Պարունակում է հանք. աղեր, միզանյութ, միզաթթու և նյութափոխանակության այլ արգասիքներ: Մարմնի մակերևույթից գոլորշիանալով՝ մեծացնում է ջերմատվությունը և նպաստում մարմնի կայուն ջերմաստիճանի պահպանմանը:

ՔՐՏՆԱԳԵՂՁԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ, **հիդրադենիտ** (< հուն. hidros – քրտինք և aden – գեղձ), քրտնագեղձի (ավելի հաճախ՝ անութ.) թարախ. բորբոքում՝ խիտ ցավոտ ուռածությամբ և կարմրությամբ: Հարուցվում է ստաֆիլոկոկներով: Ք. բ-մանը նպաստում են քրտնոտությունը, հյուծումը, սակավարյունությունը, անձն. հիգիենայի խախտումները:

ՔՐՈՒԳՄԱՆ (Krugman) Պոլ (ծ. 1953), ամերիկացի տնտեսագետ: Աշխ-ները վերաբերում են առևտր. քաղ-յան ռազմավարության, առևտր. քաղ-յան ու շուկայի կառուցվածքի փոխադարձ կապի, տարած. (աշխարհագր.) տնտ-յան հարցերին:

Նոբելյան մրց. (2008):

ՔՐՈՒԶ (Cruise) Թոմ (ծ. 1962), ամերիկացի դերասան: Նկարահանվել է «Անսահման սեր», «Լեգենդ», «Անձրևի մարդը», «Փողերի գույնը», «Ֆիրմա», «Լայն փակված աչքերով», «Անհաջողության զինվորները», «Օպերացիա «Վալկիրիա»», «Հուլիսի չորսին ծնվածը», «Սագնոլիա» և այլ ֆիլմերում:

ՔՐՈՒՔՍ (Crookes) Ուիլյամ (1832–1919), անգլիացի ֆիզիկոս և քիմիկոս: Լոնդոնի թագավոր. ընկ-յան նախագահ (1913–15): Ուսումնասիրել է էլ. պարպումները գազերում և կաթոդ. ճառագայթները (Ք-ի խողովակներում), հայտնագործել է կայծկլտման (սցինտիլացման) երևույթը, ստեղծել է դիտարկման սարք, հայտնաբերել է ***թալիումը*** (1861) և առաջինն է ստացել ***հելիումը*** լաբորատոր պայմաններում:

ՔՐՈՔՈՒՄ (Crocus), **զաֆրան**, հիբրիկազգիների ընտանիքի բազմամյա պալարակոճղեզավոր, անցողուն բույսերի ցեղ: Հայտնի է 80, ՀՀ-ում՝ 2 տեսակ՝ գրեթե բոլոր մարզերում: Գեղազարդիչ և համեմունք. բույս է: Գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

ՔՈՒԶՆԵՑ (Kuznets) Սայմոն Սմիթ (1901–1985), ամերիկացի տնտեսագետ: Աշխ-ները վերաբերում են տնտ. վիճակագրության և էկոնոմետրիայի հարցերին: Մշակել է ՀՆԱ-ի և այլ տնտ. ցուցանիշների հաշվարկման մեթոդիկա, որն օգտագործվում է մի շարք երկրներում:

Նոբելյան մրց. (1971):

ՔՈՒԹԱՅԻՍ, ք. Վրաստանում՝ Ռիոն գետի ափին: Բն.՝ շուրջ 200 հզ. (2010): Հայտնի է մ. թ. ա. VI դ-ից: Եղել է Կոլխիդայի և Իմերեթիայի թագավորությունների մայրաքաղաքը:

ՔՈՒԹԵԾ, **սկառլատինա** (Scarlatina, միջնադարի լատ.՝ scarlatum – ալ կարմիր), վարակիչ հիվանդություն (առավելապես՝ երեխաների): Հարուցիչները հեմոլիտիկ ստրեպտոկոկներն են: Բնորոշ են տենդը, անգինան, մաշկի ցանավորումը՝ հետագա թեփոտմամբ: Վարակվում են հիվանդից և բակտերիակրից՝ օդի միջոցով (հազալիս, խոսելիս ևն):

ՔՈՒԻՆ (Quinn) Էնթոնի (1915–2001), ամերիկացի կինոդերասան: Նկարահանվել է «Ճանապարհ» (խորհրդ. էկրանին՝ «Նրանք թափառում էին ճամփաներով»), «Կեցցե՛ Մապատան», «Կյանքի ծարավ», «Հույն Զորբան», «Հույն մագնատը», «Լոուրենս Արաբացի», «Բլեֆ», «Փարիզի Աստվածամոր տաճարը», «Բարաբբա» և այլ ֆիլմերում: «Օսկար» մրց. (1953, 1957):

ՔՈՒԼԻՋ (Coolidge) Քալվին (1872–1933), ԱՄՆ 30-րդ նախագահը՝ 1923–29-ին՝ Հանրապետ. կուս-յունից: 1921–23-ին՝ փոխնախագահ: Կ-ի կառ-յունը նպաստել է Գերմանիայի ռազմարդ. ներուժի վերականգնմանը (տես ***Դաուեսի պլան***), վարել է ԽՍՀՄ-ը չճանաչելու քաղ-յուն:

«ՔՈՒԼԻՍ», թատեր., գր-գեղ. հանդես (1946–96, Ստամբուլ): Հիմնադիր-խմբ. և հրտ.՝ Հակոբ Այվազ:

ՔՈՒՄԲԵՏ, ճարտ. հուշարձան Կարսից 10 *կմ* հվ՝ Էրզրում տանող ճանապարհին: Մաստարայատիպ (առանց ավանդատների) եկեղեցի է: Միակ մուտքը արմ. խորանից է, գմբեթն ավերված է: Քիվը և ներսի խոյակները բնորոշ են X դ-ի հայկ. ճարտ-յանը: Տրոմպների վրա 4 ավետարանիչների բարձրաքանդակներն են:

ՔՈՒՆ, մարդու և կենդանիների մոտ պարբերաբար առաջացող ֆիզիոլոգ. վիճակ: Բնորոշվում է արտաքին գրգռիչների հանդեպ հակազդեցության գրեթե լրիվ բացակայությամբ, մի շարք ֆիզիոլոգ. կենսընթացների ակտիվության նվազմամբ: Տարբերում են բնականոն (ֆիզիոլոգ.) և ախտաբան. Ք-ի մի քանի տեսակներ (թմրանյութ., լեթարգիական ևն):

ՔՈՒՆՋՈՒԹ (Sesamum), **սեզամ**, քունջութազգիների ընտանիքի միամյա և բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 35 տեսակ: Աշակվել է հիմնականում հնդ. Ք.՝ սուսամը (s. indicum), որն ունի 2 ենթատեսակ: Լուսասեր, ջերմասեր, խոնավասեր բույս է: Ք-ի սերմերը պարունակում են 50–65 % յուղ, մինչև 24 % սպիտակուցներ, քուսպը՝ համապատասխանաբար՝ 10 % և 40 %: Քուսպն արժեքավոր կեր է: Ք-ի հայրենիքն Աֆրիկան է:

ՔՈՒՆՔԱԾՆՈՏԱՅԻՆ ՀՈԴ, համակցված հող, կազմվում է ստորին ծնոտի հոդագլխիկով և քունքոսկրի հոդափոսիկով: Հոդն ամրացված է մի շարք ամուր կապաններով և ծամիչ մկաններով: Այդ հոդով են կատարվում ծնոտի վեր ու վար, կողմն. շարժումները, առաջ ու հետ սահումները:

ՔՈՒՇԱՆԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, հին պետություն Կենտր. Ասիայում: Առաջացել է Բակտրիայի իշխանությունից, որը կառավարել են քուշան. ցեղերը: Զարգացման ընթացքում (I–III դդ.) ներառել է ժամանակակից Միջին Ասիայի, Աֆղանստանի, Պակիստանի, Հս. Հնդկաստանի և, հավանաբար, նաև Սինցզյանի տարածքների մեծ մասը: Պահպանվել են մշակույթի բազմաթիվ հուշարձաններ, հատկապես՝ հարթաքանդակներ և արձաններ: Քուշանների մասին տեղեկություններ են հաղորդում նաև Ագաթանգեղոսը, Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին, Սեբեոսը և ուր.:

ՔՈՒՇՉԿՅԱՆ Ալինա Մաքսիմի (ծ. 1958), արտաբան, իմունաբան: Բժշկ. գիտ. դ-ր (2002): Հարություն ***Քուշկյանի*** քույրը: Աշխ-ները վերաբերում են բուժքույր. գործի բարեփոխումների և կրթ. համակարգերի զարգացման ծրագրերին: Գիտ-յունների միջազգ. (2002), ՌԴ Բժշկատեխ. (2003) և Բժշկաէկոլոգ. (2007) գիտ-յունների ակադ-ների անդամ:

ՔՈՒՇԿՅԱՆ Հարություն Մաքսիմի (ծ. 1956), վիրաբույժ-ներզատաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1993), պրոֆ. (2003): Ալինա ***Քուշկյանի*** եղբայրը: 2007–12-ին՝ ՀՀ, 2014-ից՝ ԼՂՀ առողջապ-յան նախարար: «Էրեբունի» (1992–2007), «Նաիրի» (2002–07) բժշկ. կենտրոնների հիմնադիր-գլխ. տնօրեն: Աշխ-ները վերաբերում են իմունափոփոխիչների կիրառմամբ տարածուն թունավոր խպիպի վիրահատ. բուժմանն ու վահանագեղձի որոշ հիվանդությունների ժամանակ սրտի և իմուն. համակարգի ֆունկցիաների շտկմանը:

ՌԲՆԳԱ (1998), ՀՀ վիրաբուժ. ԳԱ (2000) անդամ: ՀՀ «Մխիթար Հերացի» շքանշան (2005), ԵՊԲՀ Մխիթար Հերացու անվ. մեդալ (2006), Ֆրիտյոֆ Նանսենն հիմնադրամի հուշամեդալ (2004):

ՔՈՒՇՆԱՐՅԱՆ, **Քուշնարյով**, Քրիստափոր Ստեփանի (1890–1960), երաժիշտ-տեսաբան, կոմպոզիտոր, մանկավարժ: ՀԽՍՀ (1939) և Ուզբ. ԽՍՀ (1943) արվ. վաստ. գործիչ: Լենինգրադի կոնսերվատորիայի պրոֆ. (1939):

Զարգացրել է ձայնակարգի և պոլիֆոնիայի մասին ուսմունքները, մշակել ***մոնոդիայի*** տեսությունը, պարզաբանել հայկ. երաժշտության ծագման ու զարգացման ընթացքը, քննել Մերձ. Արևելքի հին ժողղ-ների մշակույթների հետ նրա կապերը ևն: Հեղինակ է «Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր» (ռուս., 1958), «Պոլիֆոնիայի մասին» (ռուս., 1971, ժող.) գրքերի, նաև երգեհոնի սոնատի, «Պասսակալիա և ֆուգա»-ի, թավջութակի մենանվագ սոնատի և այլ գործերի:

ՔՈՒՇՈՒԿ, գետ ՀՀ Արագածոտնի մարզում: Սկիզբ է առնում Արագած լ-ան արլ. լանջերից և Քուչակ գ-ից 2 *կմ* հս-արլ., թափվում Ապարանի ջրամբարը: Երկ.՝ 13 *կմ*:

ՔՈՒՉՈՒԿՅԱՆ Արման Թագվորի (ծ. 1932), հաշվող. տեխնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1979), պրոֆ. (1987): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1986-ից): ՀՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1981): 1986-ից՝ ԵրՄՄԳՀԻ փոխտնօրեն և գլխ. ճարտարագետ:

Աշխ-ները վերաբերում են միջին արագագործության ԷՀՄ-ների, բարձր հուսալիության հաշվող. համալիրների և ավտոմատացված հաշվող. համակարգերի նախագծման հարցերին: Ք. Մոսկվայի երկթղ. հանգույցի տոմսերի նախն. վաճառքի «Մարշրուտ-1» հաշվող. համալիրի, ԵՍ-1030, -1045, -1046 հաշվող. մեքենաների, ՎԿ-2Մ-45, -46 երկմեք., ՎԿ-3Մ-45 եռամեք., ՎԿ-2Պ-45 երկպրոցեսոր. համալիրների, ԵՍ-23-45 մատից. պրոցեսորների, ՀՀ կենսաթոշակ. ապահովման «Արաքս», ընտանեկան

նպաստների «Փարոս», գրադվածության «Սևան» տեղեկատվ. համակարգերի գլխ. կոնստրուկտորը:

Երևանի պատվ. քաղաքացի (1986): Լենինյան (1983), ՀԽՍՀ Պետ. (1974, 1976), ՀՀ նախագահի (2003) մրց-ներ, ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի շքանշան, ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալ (2013):

ՔՈՒՌԻ ԲԵԼԼՈՒ (Barbus lacerta cyri), ծածանաձկների ընտանիքի ձուկ: ՀՀ-ում ամենատարածված ձկներից է: Հանդիպում է գրեթե բոլոր գետերում, խոշոր ջրամբարներում (մինչև 2300 *մ* բարձր-ներում)՝ բացառությամբ Սևանա լճի և նրա մեջ թափվող գետերի: Միջին չափի ձուկ է, երկ.՝ 14–15 (երբեմն՝ մինչև 25) *սմ*, կ. զ.՝ 250 *գ* և ավելի:

ՔՈՒՌԻ ԵՆԹԱԲԵՐԱՆ (Chondrostoma oxyrhynchum cyri), ծածանաձկների ընտանիքի ձուկ: ՀՀ-ում հանդիպում է Արաքս, Ախուրյան, Մեծամոր, Հրազդան, Արփա, Որոտան, Քասաղ, Մարմարիկ գետերում, Արփի լճում, Ախուրյանի ջրամբարում: Միջին չափի ձուկ է, երկ.՝ 14–16 (երբեմն՝ մինչև 20) *սմ*, կ. զ.՝ 100 *գ* և ավելի: Միսն ունի համային բարձր արժեք, սակայն փոքրաթվության պատճառով արդ. նշանակություն չունի:

ՔՈՒՌԻ ԼԵՐԿԱՃՈՒԿ (Barbatula brandti), բալիտորաձկների ընտանիքի ձուկ: ՀՀ-ում հայտնաբերվել է Ձորագետ և Դեբեդ, հնարավոր է նաև Կուրի ավազանի մյուս (Տավուշ, Աղստև, Փամբակ ևն) գետերում: Վարում է մերձհատակ. կենսաձև: Նախընտրում է գետերի արագահոս տեղամասերը, թաքնվում է ստորջրյա քարերի տակ: Մարմինը ձգված է, երկ.՝ 4–6 (երբեմն՝ մինչև 8) *սմ*: Արդ. նշանակություն չունի:

ՔՈՒՌԻ ԿՈՂԱԿ [Capoeta (Varicorhinus) capoeta capoeta], ծածանաձկների ընտանիքի ձուկ: ՀՀ-ում տարածված է Արաքս, Ախուրյան, հանդիպում է նաև Արփա, Դեբեդ, Որոտան, Մեծամոր և այլ գետերում: Համեմատաբար խոշոր է: Մարմինը գլանաձև է, կողքերից՝ թեթևակի սեղմված, երկ.՝ 40–50 (երբեմն՝ մինչև 75) *սմ*, կ. զ.՝ 5 *կգ*-ից ավելի: Սիրող. որսաձուկ է: Պաշարներն զգալիորեն նվազել են և պահպանության կարիք ունի:

ՔՈՒՌԻ ՍՊԻՏԱԿԱՃՈՒԿ (Alburnus filippi), ծածանաձկների ընտանիքի ձուկ: ՀՀ-ում տարածված է Արաքս, Մեծամոր, Հրազդան, Արփա, Ախուրյան, Քասաղ, Եղեգիս, Որոտան գետերում և նրանց ջրերով սնվող արհեստ. լճակներում ու ջրանցքներում: Ավելի հաճախ հանդիպում է գետերի արագահոս տեղամասերում: Երկ.՝ 7–8 (երբեմն՝ մինչև 15) *սմ*, կ. զ.՝ մինչև 40 *գ* և ավելի:

ՔՈՒՄՊ, ձիթամզվածքային արտադր-յան երկրորդ. արտադրանք, որն ստացվում է ձիթատու բույսերի սերմերից ձեթը հանելուց հետո: Ք-ի սպիտակուցները պարունակում են ավելի շատ լիզին, մեթիոնին, ցիստին և տրիպտոֆան: Շատ են նաև կալցիումը և ֆոսֆորը: Հարուստ է B վիտամինների համալիրով: Ք-ով կերակրում են կենդանիներին:

ՔՈՒՍՏ-Ի ԿԱՊԿՈՀ, **Քուստ-ի Ատրպատական**, Սասանյան Պարսկաստանի հս. կուսակալությունը: Նախապես (III դ.) ընդգրկել է Քուստ-ի Ապախտարը (Ատրպատական), Կասպից ծովի արմ. և հվ. ափամերձ շրջանները: Արլ. Այսրկովկասի նվաճումից (IV–V դդ.) հետո սահմաններն ընդարձակվել են մինչև Կովկաս. լեռներ, և այն կոչվել է Ք. Կ.: Ըստ «Աշխարհացոյցի» ընդարձակ խմբագրման՝ Ք. Կ-ի 14 աշխարհներից կամ շահրերից է եղել նաև Հայքը (Արմն): Ավելի ուշ՝ նրա կազմի մեջ է ներառվել նաև Սիսական աշխարհը, որը 571-ին առանձնացվել է Հայկ. մարզպանությունից և միացվել Ատրպատականին:

Ք. Կ. կառավարել է Սասանյան արքայից արքայի նշանակած պատգոսապանը (աթոռանիստը՝ հավանաբար Ուտիքի Գանձակ ք-ը):

VI դ-ում *Խոսրով I Անուշիրվանի* վերափոխություններով Սասանյան Պարսկաստանի քուստակների թվին համապատասխան ստեղծվել է 4 սպարապետություն:

ՔՈՒՎԵՅԹ, **Քուվեյթի Պետություն** (Դաուլյաթ ալ-Քուվեյթ), պետություն Արմ. Ասիայում՝ Արաբ. թ-կղզու հս-ում: Սահմանակից է Սաուդյան Արաբիային և Իրաքին: Տարածքը՝ 17,8 հզ. *կմ*², բն.՝ 3,3 մլն (2012): Մայրաքաղաքը՝ *Էլ-Քուվեյթ*: Պետ. լեզուն՝ արաբ.: Կառավարման ձևը՝ սահմանադրամիապետ.: Պետության գլուխն էմիրն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը: Կազմված է 4 վարչ. նահանգապետություններից: Հավատացյալների մեծ մասը սուննի մահմեդական է: Անդամակցում է ՄԱԿ-ին, ԱՊԼ-ին, ՆԱԵԿ-ին ևն: Տնտ-յան հիմքը նավթի արտահանումն է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 54,1 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է նաև հանք. պարարտանյութեր ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, սննդամթերք, քիմիկատներ, շինանյութ ևն: Դրամ. միավորը՝ քուվեյթյան դինար:

Մ. թ. VII դ-ից Արաբ. խալիֆության կազմում էր, XVI դ-ում մտել է Օսմ. կայսրության կազմի մեջ: XVIII դ-ի սկզբից Օսմ. կայսրությունից փաստացի անկախ շեյխություն էր: 1899-ին հաստատվել է Մեծ Բրիտանիայի պրոտեկտորատ: 1961-ին հռչակվել է անկախ պետություն: 1990-ին գրավել են Սադդամ Հուսեյնի զորքերը: 1991-ին ազատագրել է բազմազգ ուժերի դաշինքը՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ:

Հայերը Ք-ում հաստատվել են 1950-ական թթ-ից, հիմնականում՝ Իրաքից, Իրանից, Լիբանանից, Սիրիայից, Պաղեստինից ու Հորդանանից: Համայնքը ձևավորվել է 1954-ից, երբ հայերի թիվն անցել է 1000-ը, ստեղծվել է Ազգ. վարչություն: 1956-ից համայնքն անցել է ՄՏԿԿ հովանու ներքո: 1963-ին կառուցվել է եկեղեցի-հանդիսասրահ: 1982-ին Էնտուզ էլ-Քուվեյթում ստեղծվել է Ք-ի և Արաբ. ծոցի երկրների թեմ: 1958-ից գործում է հայկ. կիրակնօրյա դպրոց, 1961-ից՝ Հայ ազգ. վարժարանը, որն ստացել է միջնակարգ դպրոցի կարգավիճակ: Մինչև Ծոցի պատերազմը (1991) համայնքը շաբաթականաբար ստվարացել է՝ հասնելով 10–12 հզ-ի: Գործել են ֆուտբոլի խումբ, «Սեպուհյան» թատերախումբը, երկսեռ երգչախմբեր ևն: Պատերազմի պատճառով հայերը զանգվածաբար հեռացել են Ք-ից: Ներկայում Ք-ում հայերի թիվը շուրջ 5 հզ. է, գերակշիռ մասն ապրում է մայրաքաղաքում: Գործում են Սբ Վարդանանց հայկ. եկեղեցին, վարժարան՝ նախակրթ., միջնակարգ և երկրորդ. բաժիններով:

«ՔՈՒՐԱ», գր-գեղ., երգիծ. թերթ (1923, 1928, Մոսկվա, № 1–3, վերջինը՝ տարեգիրք): Մոսկվայի հայ պրոլետգրողների նույնանուն խմբակցության հրտ-յուն: Խմբ.՝ Գուրգեն Հայկունի:

ՔՈՒՐԴԻՍՏԱՆ, ազգագր. տարածք Արմ. Ասիայում՝ Իրանի, Թուրքիայի, Իրաքի, Սիրիայի տարածքներում, որը բնակեցված է հիմնականում քրդերով: Որոշակի սահմաններ չունի: Քրդերը պայքարում են անկախ պետականություն ունենալու համար:

ՔՈՒՔԵՐ (Cooper) Գերի (Ֆրենկ Ջեյմս, 1901–1961), ամերիկացի դերասան: «Հոլիվուդի» լավագույն դերասաններից (1930-ական թթ-ից): Կինոյում մարմնավորել է եռանդուն, անվախ, վեհանձն հերոսների («Վիրջինիացին», «Մարոկկո», «Հրաժեշտ զենքին», «Ում համար է հնչում զանգը», «Հարթավայրի բնակիչը», «Կովբոյը և լեդին», «Ուղիղ կեսօրին» ևն), կոմիկ. («Միստր Դիդոն տեղափոխվում է քաղաք», «Կապույտ Մորուքի ութերորդ կինը» ևն) կերպարներ: «Օսկար» (1942, 1953) և պատվո «Օսկար» (1961) մրց-ներ:

ՔՈՒՔԵՐ Գորդոն (1927–2004), ամերիկացի աստղագնաց: ՌՕՄՒ պաշտոնաթող գնդ.: Թռել է «Մերկուրի» (1963-ի մայիս) և «Ջեմինի» (1965-ի օգոստ.) տիեզերանավերով:

ՔՈՒՔԵՐ Ջեյմս Ֆենիմոր (1789–1851), ամերիկացի գրող: Գործերում համադրել է լուսավորության և ռոմանտիզմի տարրերը: Հեղինակ է «Լրտեսը» (1821, հայ.՝ 1984) վեպի, որտեղ զարգացրել է Վ. Սկոտի պատմասարկած. վեպի ավանդույթները, «Լոցման» (1823), «Կարմիր ծովահենը» (1828) ծով. թեմաներով, «Վերջին մոհիկանը» (1826, հայ.՝ 1940), երգիծ. «Մոնիկինները» (1835), «Գազանորսը» (1841, հայ.՝ 1973) և այլ վեպերի, նաև պամֆլետների («Ամերիկացի ժողովրդավարը», 1838):

ՔՈՒՔԵՐ, **Կաուպեր** (Cowper), Ուիլյամ (1731–1800), անգլիացի բանաստեղծ-սենտիմենտալիստ: Անգլ. գրկ-յան մեջ նամակագր. ժանրի վարպետ: Հեղինակ է «Օլնեյան հիմներ» (1779), «Բանաստեղծություններ» (հ. 1, 2, 1782, 1785) ժող-ների, «Խնդիր» (1785) նկարագր. պոեմի և այլ գործերի:

Օ

Օ, հայ. այբուբենի 38–րդ տառը, անվանումը՝ օ: Հայ–ի հետին շարքի միջին բարձրացման շրթնայնացած ձայնավոր հնչյուն (հնչույթ) է: Թվային արժեք չունի:

ՕԱԶԻՍ (ուշ լատ.՝ oasis), 1. անապատ. և կիսաանապատ. տեղամասեր, որոնց խոնավությունը հարևան շրջանների համեմատությամբ զգալիորեն մեծ է՝ գետերին կամ գրունտ. ջրերին մոտ լինելու շնորհիվ: Օ–ներն անապատներում բնակչության կենտրոնացման և գղտ. բույսերի մշակման վայրեր են: 2. Օ–ներ են կոչվում նաև Անտարկտիդայի ծայրամաս., սառցածածկույթից ազատ տարածքները:

ՕԲ, գետ Արմ. Սիբիրում: Կազմավորվում է Կատունն և Բիա գետերի միախառնումից: Թափվում է Կարայի ծովի Օ–ի ծովախորշը՝ առաջացնելով դելտա: Երկ.՝ 3650 *կմ* (Իրտիշի ակունքից հաշված՝ 5410 *կմ*), ավազանը՝ 2990 *կմ*², ջրի միջին ծախսը՝ 12500 *մ*³/*վ*: Գլխ. վտակները՝ Վասյուգան, Մեծ Յուգան, Իրտիշ, Հս. Սոսվա, Չումիշ, Տոմ, Չուդիմ ևն: Նավարկելի է: Գործում է Նովոսիբիրսկի ջրէկը: Ափին են Բառնաուլ, Նովոսիբիրսկ, Սուրգուտ, Սալեխարդ և այլ ք–ներ:

ՕԲԱՄԱ (Obama) Բարաք Հուսեյն (ծ. 1961), ԱՄՆ 44–րդ նախագահը՝ 2009–17–ին՝ Դեմոկրատ. կուս–յունից: 1–ին սևամորթ նախագահն է: Ընդունել է ԱՄՆ–ի առողջապ–յան համակարգի բարեփոխման օրենքը, նոր պայմանագիր է ստորագրել ՌԴ–ի հետ՝ ռազմավար. հարձակող. սպառազինման սահմանափակման վերաբերյալ: Խաղաղության Նոբելյան մրց. (2009):

ՕԲԱՍԱՆՋՕ (Obasanjo) Օլուսեգուն (ծ. 1937), Նիգերիայի նախագահ՝ 1976–79 և 1999–2007–ին: Գեն.: 1975–76–ին՝ փոխ–նախագահ:

ՕԲԵՐԹ (Oberth) Հերման (1894–1989), հրթիռ. տեխնիկայի հիմնադիրներից: Ազգությամբ՝ գերմանացի: Ծնվել և աշխատել է Ռումինիայում, ապա՝ ԱՄՆ–ում (առաջին ԵԱՀ–ի հրթիռների ստեղծման մասնակից), 1958–ից՝ Գերմանիայում:

ՕԵՐՈՆ, *Ուրանի* արբանյակը. հայտնաբերել է Ու. *Հերշելը* (1787): Հեռ–յունը Ուրանից՝ 580,8 հզ. *կմ*: Պտտման սիդերիկ պարբերությունը՝ 13 օր 12 *ժ*, տրամագիծը՝ մոտ 1600 *կմ*: Օ–ի ուղեծրի հարթությունը գրեթե ուղղահայաց է Ուրանի ուղեծրի հարթությանը:

ՕԵՐՏԻՆՍԿԻ Զձիլավ Մարիան (1894–1978), լեհ պատմաբան, հայագետ: Աշխ–ների մի մասը վերաբերում է Լեհաստանի ու Ուկրաինայի հայկ. գաղթավայրերի պատմությանը, Հայոց եկեղեցուն, պատմ. ավանդույթներին: Ուշագրավ են «Լեհահայերի ֆլորենտյան միությունը և նրանց եպիսկոպոսների ցուցակը» (1934, գերմ.), «Լեհահայերը եւ անոնց Անդրէաս արքեպիսկոպոսը Եագելովիցի մէջ» (հայ. թարգմ.՝ ՀԱ, 1962, № 1–12, 1963, № 1–6) երկերը:

ՕԲՅԵԿՏԻՎ, *օպտիկական համակարգ*, որտեղ ձևավորվում է օբյեկտի իրական, շրջված պատկերը: Օպտիկ. սարքերի մեծ մասում (մանրադիտակ, դիտափող) Օ–ով ստեղծված պատկերը դիտում են մեծացնող օպտիկ. մեծափող համակարգով՝ okուլյարով:

ՕԲՈՐԻՆ Լև Նիկոլաևիչ (1907–1974), ռուս. դաշնակահար: ԽՍՀՄ ժող. արտիստ (1964): Որոշ կոմպոզիտորների մի շարք երկերի (նաև Ա. Խաչատրյանի դաշնամուրի կոնցերտի. նվիրված է Օ–ին) առաջին կատարողն էր: Հանդես է եկել որպես մենակատար և եռյակում (Դ. Ֆ. *Օյստրախի* և Ս. Ն. Կնուշևիցկու հետ):

ԽՍՀՄ Պետ. (1943), դաշնակահարների Ֆ. Շոպենի անվ. միջազգ. մրցույթի 1–ին (1927, Վարշավա) մրց–ներ:

ՕԲՈՒՀՈՎ, Իվան Ֆիլիմոնովիչ (1920–2005), շին. մեխանիկայի և թռչող սարքերի ամրության տեսության բնագավառի ռուս. գիտնական: ՌԳԱ ակադ. (1974): Աշխ–ները վերաբերում են բարակապատ տարած. համակարգերի տեսությանը և հաշվարկման մեթոդներին: ԽՍՀՄ Պետ. (1976), Լենինյան (1988) մրց–ներ:

ՕԲՈՒԽՈՎ, Սերգեյ Վլադիմիրովիչ (1901–1992), ռուս դերասան, ռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1954): Սոց. աշխ. հերոս (1971): 1931–ից՝ Տիկնիկ. կենտր. թատրոնի ղեկ.: Մշակել է տիկնիկ. թատրոնի տեսությունն ու մեթոդաբանությունը: Բեմադրել է ներկայացումներ փոքրերի («Գայլաձկան հրամանով», 1936, ևն) և մեծերի «Արտասովոր համերգ», 1946, 1968, ևն) համար: Տիկնիկավարների միջազգ. միության նախագահ (1976–ից, 1984–ից՝ պատվ. նախագահ): ԽՍՀՄ Պետ. (1946), Լենինյան (1984) մրց–ներ:

ՕԲՈՒԶՈՎ, Վասիլի Պարմենովիչ (1851–1920), ռուս. թերապևտ, գիտ. դպրոցի հիմնադիր: Տվել է սրտամկանի ինֆարկտի կլինիկայի դաս. նկարագիրը (1910, Ն. Դ. *Ստրաժեսկոյի* հետ): Մշակել է որովայնի խոռոչի օրգանների շոշափման մեթոդը:

ՕԲՈՒԶՈՎ, Վլադիմիր Նիկոլաևիչ (1874–1949), տրանսպորտի բնագավառի ռուս. գիտնական: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939): Աշխ–ները վերաբերում են երկթղ–ների նախագծմանը, կառուցմանը և շահագործմանը, փոխադրամիջոցների տարբեր տեսակների զարգացմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942, 1943):

ՕԲՐԱԶՑՈՎԱ, Ելենա Վասիլևնա (1939–2015), ռուս. երգչուհի (մեցցո–սոպրանո): ԽՍՀՄ ժող. արտիստ (1976): Սոց. աշխ. հերոս (1990): 1964–ից՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մեներգչուհի (Մարինա Մնիշեկ՝ Մ. Պ. Մուսորգսկու «Բորիս Գոդունով», Կարմեն՝ Ժ. Բիզեի «Կարմեն», Էբոլի, Ամներիս՝ Ջ. Վերդիի «Ռոն Կառլոս», «Այիդա», ևն): Հանդես է եկել նաև համերգներով:

Պ. Ի. Չայկովսկու անվ. միջազգ. մրցույթի 1–ին (1970, Մոսկվա), Լենինյան (1976) մրց–ներ:

ՕԲՐԱՅԵՆ (O'Brien) Էդնա (ծ. 1932), իռլանդացի անգլիագիր գրող: Պրոֆ. (2006): Հեղինակ է «Գեղջկուհիներ» (1960), «Խաղաղության զոհերը» (1966), «Անտառում» (2002) հոգեբ. վեպերի, «Մոլեռանդի սիրտը» (1984) պատմվածքների ժող–ի: Ջոյսի (1999) և Բայրոնի (2009) կենսապատումների:

ՕԲՐԵԳՈՆ (Obregón) Ալվարո (1880–1928), Մեքսիկայի նախագահ՝ 1920–24–ին, վերընտրվել է 1928–ին, սակայն սպանվել է մինչև պաշտոնն ստանձնելը: Մեքսիկ. հեղ–յան (1910–17) մասնակից:

ՕԲՐԵՆՈՎԻՉՆԵՐ, թագավոր. հարստություն Սերբիայում՝ 1882–1903–ին: Հիմնադրել է Միլոշ Օ.: Երևելի ներկայացուցիչները՝ Միխայիլ Օ. III, Միլան Օ.: Վերջին Օ–ին՝ Ալեքսանդրին (1889–1903), սպանել են *Կարագեորգիևիչների* կողմնակիցները:

ՕԲՐՈՒՉԵՎ, Վլադիմիր Աֆանասևիչ (1863–1956), ռուս երկրաբան և աշխարհագետ: ԽՍՀՄ ԳԱ ակադ.: Սոց. աշխ. հերոս (1945): Աշխ–ները վերաբերում են հիմնականում Սիբիրի երկրբ. կառուցվածքին և օգտ. հանածոներին, տեկտոնիկային, նեոտեկտոնիկային, սառցութաբանությանը: Լենինյան (1926) և ԽՍՀՄ Պետ. (1941,1950) մրց–ներ:

ՕԲՈՒՏԻ Կեյձո (1937–2000), Ճապոնիայի վարչապետ և Լիբերալ–դեմոկրատ. կուսյան առաջնորդ՝ 1998–2000–ին: Գլխավորել է ֆին. (1976–79), անվտանգության (1982–84), բյուջետ. (1986–87) խորհրդարան. կոմիտեները:

ՕԳԱՆԵՋԱՇՎԻԼԻ Սաշա (Օհանյան Ալեքսանդր) Արշակի (1889–1932), քամանչահար, մանկավարժ: Հանդես է եկել Աստոն *Մայիլյանի* «Արևելյան նվագախմբում» (Բաքու), *Հազիրիի* խմբում: Բաքվում հիմնադրել է Արևելյան կոնսերվատորիան (1920), Երևանում՝ Ռադիոյի ժող. գործիքների անսամբլը (նաև ղեկ.), ԵՊԿ–ի արլ. երաժշտության ֆակ–ը (1926): Հեղինակ է «Ֆահրադ և Շիրին» օպերայի, սաներից են Արամ *Մնացականյանը*, Գուրգեն Լ. *Միրզոյանը*:

ՕԳԱՆԵՋՈՎ Առաքել Կարապետի (1907–1974), խորհրդ. բանակի գեն.-մայոր (1953): 1939-ից ծառայել է Հեռավոր Արևելքում, 1945-ին՝ 361-րդ հրաձգ. դիվիզիայի հրամ., մասնակցել է Ճապոնիայի դեմ պատերազմին: 1948-ին՝ միավորման հրամ.: 1957-ին զորացրվել է:

ՕԳԱՆԵՋՈՎ Գուրգեն Գաբրիելի (1886–1983), ճարտարագետ-գյուղատնտես: Գղտ. գիտ. դ-ր (1937), պրոֆ. (1938): ՀԽՍՀ գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1940): ՀԽՍՀ աշխ. հերոս (1926): Աշխ-ները վերաբերում են Մեծամոր լճի և Մեծամոր գետի ուսումնասիրման, ոռոգման համակարգերի շին-յան, ճահիճների չորացման, Սևան–Հրազդան համակարգի հիդրոտեխ. կառույցների աշխ-ի ռեժիմի խնդիրներին:

ՕԳԱՆԵՋՈՎԱ Գոհար Հրանտի (ծ. 1949), բուսաբան-կարգաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1989), պրոֆ. (2001): Աշխ-ները վերաբերում են բույսերի, մասնավորապես՝ միաշաքիլավորների էվոլյուցիային, կարգաբանությանը և անատոմիային, նաև բնագիտ-յան ընդհ. հարցերին, կենսբ-յան փիլ-յանը: Հայկ. բուսաբ. ընկ-յան փոխ-նախագահ:

ՕԳԱՆԵՋՈՎԱ Թամար Սմբատի (1895–1976), դերասանուհի: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1958): 1917–25-ին՝ Մոսկվայի «Ձղջիկ», Կորշի, Սարատովի էքսցենտրիկ ներկայացումների, 1925-ից՝ Մոսսովետի անվ. թատրոնների դերասանուհի (Էմիլյա՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», Արկադինա՝ Ա. Պ. Չեխովի «Ճայը», Ջարուհի՝ Գ. Տեր-Գրիգորյանի «Վերջին մեխակներ», ևն): Նկարահանվել է «Տասներկու ուղեկից» կինոնկարում (1961, Հայֆիլմ):

ՕԳԱՆԵՍՈՆ (լատ.՝ Oganesson), Og, տարրերի պարբեր. համակարգի VIII խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 118, ա. զ.՝ 294, 214: Նախկինում հայտնի էր ունունոկտիում կամ էկա-ռադոն անունով: Տարրի բացահայտման հաստատումից հետո այն կոչվել է հայտնագործողի՝ Յ. Հովհաննիսյանի անունով: Արհեստականորեն սինթեզված ճառագայթաակտիվ տարր է: Առավել կայուն նուկլիդն է ^{294}Og ($T_{1/2}$ = = 1 *մվ*): Իներտ գազ է, գտնվում է պինդ վիճակում, $t_{եռ.}$՝ 80 ± 30°C, հալման ջերմաստիճանում խտ.՝ 5 *գ/սմ*^{3}, – 62°C-ում՝ խտ.՝ 4,4 *գ/սմ*^{3}: Ի տարբերություն թեթև նմանակների՝ O. կարող է քիչ էլեկտրոակցեպտոր տարրերի հետ առաջացնել հարաբերականորեն կայուն միացություններ, օքսիդանալ թթվածնով:

ՕԳԱՆՆԵՍՈՎ Հրանտ Սահակի (1927–1984), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1977), պրոֆ. (1982): Աշխ-ները վերաբերում են ԽՄԿԿ պատմության հարցերին:

ՕԳԱՆՆԵՍՈՎ (Հովհաննիսյան) Վազգեն Միքայելի (1920–1993), օդաչու: ԽՄ հերոս (1946), գնդ.: Կատարել է 290 մարտ. թռիչք, ոչնչացրել թշնամու 16 ինքնաթիռ: Հերոսի կոչման արժանացել է Բեռլինի գրավման ժամանակ ցուցաբերած խիզախության համար: Լենինի, Հոկտ. հեղ-յան, Կարմիր աստղի (3), ՀՄՊ 1-ին աստիճանի (2), Կարմիր աստղի շքանշաններ:

ՕԳԱՆՈՎ Ալեքսանդր Նիկոլայի (1912–1991), ֆուտբոլիստ, մարզ. գործիչ: ՀԽՍՀ վ. մ. (1947, առաջինը՝ Հայաստանում): Ֆիզկուլտուրայի և ս. վ. գ. (1969): 1929–35-ին խաղացել է Ադրբեջանի ֆուտբոլի հավաքականում: 1945–56-ին՝ ՖԿՀՊԻ փոխտնօրեն, 1954–61-ին՝ ՀԽՍՀ սպորտկոմիտեի նախագահ:

ՕԳԱՐԿՈՎ Նիկոլայ Վասիլևիչ (1917–1994), ԽՍՀՄ մարշալ: ԽՄ հերոս (1977): 1961–68-ին՝ ԶՕ-ների զորքերի շտաբի պետ և հրամ.: 1968-ից՝ ԽՍՀՄ ԶՈՒ ԳՇ պետի 1-ին տեղակալ: 1977–84-ին՝ պետ, 1974-ից՝ ԽՍՀՄ պաշտպ-յան նախարարի տեղակալ: 1977–84-ին՝ 1-ին տեղակալ: 1984–88-ին՝ Արմ. ուղղության զորքերի գլխ. հրամ.: Լենինյան մրց. (1981):

ՕԳԻՆՍԿԻ (Ogiński) Միխալ Կլեոֆաս (1765–1833), լեհ կոմպոզիտոր: 1802-ից՝ Ս. Պետերբուրգում (1810-ից՝ սենատոր), 1815-ից՝ Ֆլորենցիայում: Հեղինակ է «Զեղիդա և Վալկուր կամ Բոնապարտը Կաիիրեում» (1799) և այլ օպերաների, «Հրաժեշտ հայրենիքին» (1794) և այլ պոլոնեզների, դաշնամուր. պիեսների, ռոմանսների, երգերի:

ՕԳՆԱՅԱՆ Սագո Հակոբի (ծ. 1955), մատենագետ: Հեղինակ է «Մատենագիտութիւն լիբանանեան եւ օտար մամուլի (հայկական նիւթեր), 1978» (1980), Բեյրութի «Սփիւռք» (1984), «Երկաթէ շղթեփ» (1993), «Հասկ» հայագիտական տարեգիրք» (1996), «Հայկազեան հայագիտական հանդէս» (2010) և այլ պարբ-ների մատենագիտ-յունների: O-ի աշխատասիրությամբ հրատարակվել է նաև «Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ (ԱՍԱԼԱ)» (2015) վավերագրությունը:

ՕԳՆՅՈՎ Սերգեյ Իվանովիչ (1886–1951), ռուս. կենդանաբան, սողունաբանների մոսկովյան գիտ. դպրոցի հիմնադիրը: ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1947): Աշխ-ները վերաբերում են կաթնասունների կարգաբանությանը, կենդանիների ֆաունիստիկային, էկոլոգիային և աշխարհագրությանը: Հեղինակ է «ԽՍՀՄ-ի գազանները» (հ. 1–7, 1928–50) դաս. ամփոփագրի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1942, 1951):

«ՕԳՈՆՅՈՎ» («Огонёк» – «Փոքրիկ կրակ»), ռուս. հաս-քաղ., գր-գեղ. շաբաթ. հանդես (1899–1918, Ս. Պետերբուրգ, 1923-ից՝ Մոսկվա):

ՕԳՈՍՏԻՆՈՍ ԵՐԱՆԵԼԻ (Augustinus Sanctus) Ավրելիոս (354–430), քրիստ. աստվածաբան և եկեղեցու հայր: Հիպպոն ք-ի (Հս. Աֆրիկա) եպս. (395-ից): Զարգացրել է ուսմունք առաքինության և նախասահմանվածության մասին՝ ընդդիմանալով Պելագիուսի ուսմունքին: Նրա քրիստ. նորպլատոնականությունը գերիշխել է արևմտաեվրոպ. փիլ-յան և կաթոլիկ աստվածաբան-յան մեջ ընդհուպ մինչև XIII դ.:

ՕԳՈՍՏՈՍ (Augustus, մինչև մ. թ. ա. 27-ը՝ **Օկտավիանոս**, մ. թ. ա. 63–մ. թ. 14), Հռոմի կայսր՝ մ. թ. ա. 27-ից: Հուլիոս *Կեսարի* քրոջ թոռը և որդեգիրը: Մ. թ. ա. 31-ին Ակտիումի մոտ Մ. *Անտոնիոսի* և *Կլեոպատրա* VII-ի դեմ տարած հաղթանակով ավարտել է քաղաքաց. պատերազմը (մ. թ. ա. 43–31): Նրա կառավարման ձևն ստացել է *պրինցիպատ* անվանումը:

O-ի արլ. քաղ-յան մեջ կարևոր տեղ են ունեցել Պարթև. թագավորությունը և Հայաստանը: Զգտել է Մեծ Հայքը իր ազդեցությանը ենթարկել դրածո գահակալների միջոցով:

ՕԳՈՍՏՈՍ (լատ.՝ Augustus – «սրբազան»), օրացուց. տարվա 8-րդ ամիսը (31 օր): Անվանումը՝ Հռոմի Գայոս Հուլիոս Կեսար Օկտավիանոս Օգոստոս կայսեր անունից: Ամռան վերջին ամիսն է: O-ի 15-ի մոտակա կիրակի օրը ՀԱԵ նշում է Սբ Աստվածածնի վերափոխման տոնը, իսկ նախաքրիստ. Հայաստանում հեթոնոս. տարվա առաջին ամիսն էր: Ամանորը նշվել է O-ի 11-ին (Նավասարդի 1-ին):

ՕԳՏԱԿԱՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, համակարգի կամ սարքի էներգիայի փոխակերպման կամ փոխանցման արդյունավետության գործակիցը. որոշվում է սարքի արտադրած օգտ. էներգայի և նրա աշխատեցման համար ծախսված էներգիայի հարաբերությամբ: Չափազուրկ մեծություն է՝ 1-ից փոքր:

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ, երկրակեղևի անօրգ. և օրգ. բնական միներալ. գոյացումներ, որոնք տնտ-յան նյութ. արտադրյան ոլորտի հիմքն են: Լինում են պինդ (ածուխներ, մետաղ. և ոչ մետաղ.), հեղուկ (նավթ, հանք. ջրեր) և գազ. (բնական այրվող և իներտ գազեր) վիճակում: Բաժանում են 3 հիմն. խմբերի՝ վառելիք., մետաղ. և ոչ մետաղ.: ՀՀ տարածքում առավել տարածված են մետաղ. և ոչ մետաղ. O. հ.:

«ՕԳՈՒՏ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ», *Ամիրդովլաթ Ամասիացու* աշխ-ներից: Ընդհանրացնում է միջնադարի հայ բժիշկների աշխ-ները տես. և գործն. բժշկության հարցերի վերաբերյալ: Գիրքը գրել է 1466–69-ին Ֆիլիպպոպոլում (այժմ՝ Պլովդիվ, Բուլղարիա) իր ժամանակի գիտ. պատշամ մակարդակով, անտիկ ու արաբ. աղբյուրների օգտագործմամբ: Առաջին մասն Ամիրդովլաթի «Ուսումն բժշկութեան» (1459) աշխ-յան հեղինակ. մշակումն է, 2-րդը՝ «Գիրք բժշկութեան տումարի» խորագրով, վերաբերում է մահճաբուժության հարցերին: 1940-ին հրատարակվել է Հայաստանում:

ՕԴ, Երկրի մթն-ը կազմող գազերի խառնուրդ՝ ազոտ (78,09 %՝ ըստ ծավալի), թթվածին (20,95 %), ազնիվ գազեր (0,94 %), ածխաթթու գազ (0,03 %), գումար. զանգվածը՝ մոտավորապես $5{,}2 \cdot 10^{15}$: Խտ.՝ 1,2928 *գ/լ*, լուծելիությունը ջրում՝ 29,18 *սմ*^{3}*/լ*: Շնորհիվ O-ում պարունակվող թթվածնի՝ այն օգտագործում են որպես քիմ. ազդակ տարբեր շարժընթացներում: O-ից ստանում են թթվածին, ազոտ և այլ գազեր: Սեղմած O. բանող մարմին է պնևմատիկ սարքերում, օր.՝ ավտոմոբիլների դողերում, շիթային և փոշեցիր ապարատներում: O. կենդանի օրգանիզմների կենսագործունեության պարտադիր բաղադրիչ է: Արդ-յան և տրանսպորտի զարգացումը հանգեցրել է O-ի աղտոտման. նրանում մեծանում է ածխաթթվի և այլ գազերի պարունակությունը: Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների համակարգում կարևոր նշանակություն ունեն O-ի վիճակի սան. հսկումը, արդ. գազերի մանրակրկիտ մաքրումն ու վնասազերծումը՝ նախքան դրանց արտանետումը մթն.:

ՕԴԱՓՆԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ (ՆԱՍԱ, National Aeronauttics and Space Administration – NASA), ԱՄՆ կառյան գերատեսչություն: Հիմնադրվել է 1958-ին: Աշակում է տիեզ. թռիչքների, տիեզերանավերի ստեղծման և այլ տիպի ծրագրեր: Միավորում է 10 ԳՀ կենտրոններ, այդ թվում՝ Լ. Ջոնսոնի անվ. տիեզ. կենտրոնը (Հյուսթոն, Տեխասի նահ.), Մարշալի կենտրոնը (Հանթսվիլ, Ալաբամայի նահ.), Ջ. Քենեդիի կենտրոնը՝ Կանավերալ հրվանդանում (Ֆլորիդայի նահ.) ևն:

ՕԴԱՊՆԱՅՈՒԹՅՈՒՆ, **աերոնավտիկա** (< ***աերո***... և հուն.՝ nuta – լողացող), օդից թեթև սարքերով (օր.՝ օդապարիկնե-րով) թռչելը: Ավիացիայի զարգացման սկզբին «Օ.» եզրույթը նշանակել է նաև օդից ծանր սարքերով (ինքնաթիռներով և ուղղաթիռներով) թռչելը:

ՕԴԱԿԱՅԱՅՆԵՐ, **աերոբներ**, օրգանիզմ-ներ, որոնք կենսագործության անհրա-ժեշտ էներգիան ստանում են մթն. թթվածնի մասնակցությամբ տեղի ունե-ցող օքսիդացման միջոցով: Օ. են գրեթե բոլոր կենդանիները ու բույսերը, բազ-մաթիվ միկրոօրգանիզմներ: Անպայման (օբլիգատ) կամ խիստ Օ. զարգանում են միայն թթվածնի առկայության պայման-ներում (օր.՝ քացախաթթվային բակտե-րիաները), պայման. (ֆակուլտատիվ) Օ.՝ նրա չնչին կոնցենտրացիաների դեպքե-րում (օր.՝ խմորասնկերը):

ՕԴԱՃՆՇԱԿԱՆ ՇԱՐԺԻՉ, սեղմված օդի էներգիան մեխ. աշխ-ի փոխակերպող մեքենա: Տարբերում են ծավալ. (մխոցա-յին, պարուրակային) և տուրբին. Օ. շ-ներ: Օգտագործում են հիմնականում արդ-յան մեջ՝ ձեռքի մեքենաների (օր.՝ շաղափնե-րի, մանեկապտտիչների) շարժաբերման համար և պայթյունավտանգ ու խոնավ վայրերում:

ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ, օդ. տարածություն՝ քաղաքի (ավանի, գյուղի) կամ արդ. ձեռն-յան տարածքի սահմաններում: Օ. ա–ի վերին սահմանը պայմանականորեն ըն-դունված է տարածքի՝ ամենաբարձր շեն-քից կամ կառույցից փոքր–ինչ բարձր: Օ. ա. մարդու, կենդանիների և բույսերի կյանքի, ինչպես նաև տարբեր տեխնոլոգ. շարժըն-թացների, օդափոխման, ջեռուցման և այլ համակարգերի համար անհրաժեշտ օդի աղբյուր է: Օ. ա. անընդհատ աղտոտ-վում է արդ. ձեռն-ների, օդափոխման և ջեռուցման տեղակայանքների արտանե-տումներով, նաև մարդու և կենդանիների կենսագործունեության արգասիքների քայքայումից առաջացող նյութերով:

ՕԴԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾՆԵՐ, համեմատա-բար համասեռ ֆիզ. հատկություններով (ջերմ., խոնավության, թափանցիկութ-յան) օդի ծավալուն (հիմնականում՝ հորի-զոն. ուղղությամբ) մասեր՝ ներքնոլորտում, որոնք շարժվում են մթն-ի ընդհ. շրջա-նառության որևէ հոսանքի ուղղությամբ: Ըստ ձևավորման շրջանների՝ տարբերում են արկտիկ. և բարեխառն լայն-ների, արևադարձ. և հասարակած., ըստ ջերմ. հատկանիշների՝ տաք, ցուրտ և այլ Օ. զ.:

ՀՀ տարածքի եղանակ. ռեժիմի վրա հիմնականում ազդում են արմ. բարե-խառն Օ. զ. (55 %): Ամռանը հվ–ից ՀՀ տարածք են թափանցում արևադարձ. ցամաք. (55 %), առանձին դեպքերում՝ նաև մերձարևադարձ. ծով. (Միջերկր. և Սև ծովեր) Օ. զ.: Ձմեռ. ամիսներին հանրա-պետության տարածքը ենթակա է սիբիր. անտիցիկլոնի և եվրոպ. մասում ձևավոր-վող բարձր ճնշման մարզից թափանցող Օ. զ–ի ազդեցությանը:

ՕԴԱՌԵԱԿՏԻՎ ՇԱՐԺԻՉ, ռեակտիվ շար-ժիչ, որում ռեակտիվ քարշուժ ստեղծելու համար որպես բանող մարմին օգտա-գործվում է մթն. օդը: Հեղուկ վառելանյու-թի այրման ժամանակ որպես օքսիդիչ օգ-տագործվում է մթն. օդի թթվածինը: Ըստ օդի սեղմման եղանակի՝ տարբերում են ճնշակ. և անճնշակ. Օ. շ–ներ: **Ճնշակային** Օ. շ–ում օդը սեղմվում է ***օդառիչում***, այնու-հետև՝ գազատուրբինով պտտվող մեխ. ճնշակում (տուրբոռեակտիվ շարժիչներ): **Անճնշակային** Օ. շ–ում օդը սեղմվում է հանդիպակաց հոսքի ճնշման ազդե-ցությամբ: Անճնշակ. Օ. շ–ները լինում են ուղղահոս (այդ թվում՝ հիպերձայն.) և բաբախող:

ՕԴԱՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԹՈՒՉՈՂ ՍԱՐՔ, բազմակի օգտագործման թռչող սարք, որը նախատեսված է տիեզ. տարածութ-յուն թռչելու համար: Օգտագործվում է մերձերկր. ուղեծրակայաններն անձնա-կազմեր ու բեռներ տանելու և այնտեղից վերադարձնելու, տիեզերքում և մթն-ում մանևրներ, օդանավակայանում վայր-էջքներ կատարելու և այլ նպատակների համար:

ՕԴԵՆ (Auden) Ուիսթեն Հյու (1907–1973), անգլիացի բանաստեղծ: 1939–ից՝ Ամե-րիկայում: Հեղինակ է «Տագնապի դար» (1947), «Աքիլլեսի վահանը» (1955), «Կլիդոյի պատվին» (1960) և այլ ժող–ների: Պուլի-ցերյան (1948), Բոլինգենի (1954) մրց–ներ:

ՕԴԵՍԱ, ք–նվ հնգստ Ուկրաինայում, համանուն մարզի վարչ. կենտրոնը Սև ծովի ափին: Բն.՝ շուրջ 1 մլն (2010): Երկթղ. հանգույց է, ունի օդանավակա-յան: Գործում են բազմաթիվ բուհեր (այդ թվում՝ համալսարան, երաժշտ. ակադ.), թատրոններ (նաև օպերայի և բալետի) ու թանգարաններ (հնագիտ., գեղ., Ա. Ս. Պուշկինի անն): Հիմնադրվել է 1794–ին՝ որպես ռուս. ամրոց՝ թուրք. հաջիբեյ բնա-կավայրի տեղում:

Օ–ի առաջին հայ բնակիչները (մոտ 30 ընտանիք) եկել են 1830–ական թթ–ին Աքերմանից և Գրիգորիուպոլսից: XIX դ–ի վերջին Օ–ում բնակվել է ավելի քան 1200 հայ: Նրանց թիվն ավելացել է Թուրքիա-յում 1895–96–ի կոտորածներից և 1915–ի Մեծ եղեռնից հետո: 1880–ական թթ–ին կառուցվել է հայկ. եկեղեցի (ավերվել է ԵՀՊ–ի ժամանակ), բացվել է հայկ. դպրոց (գործել է մինչև 1930–ական թթ.), լույս են տեսել «Արմյանե ի վոյնա» (1916–17) ռուս. հանդեսը, «Հոսանք» (1918–19), «Աստղ» (1920) թերթերը:

Օ–ում հայ ազգ. կյանքն աշխուժացել է 1980–ական թթ–ի վերջից: 1988–ի Սպի-տակի երկրաշարժից տուժած շատ հայեր հաստատվել են Օ–ում, 1994–ին՝ շուրջ 20 հզ. հայ: Ներկայում հայերի թիվն անցնում է 30 հզ–ից: Ստեղծվել է հայկ. մշակութ. ընկ., գործում են Սբ Գրիգոր Լուսավո-րիչ եկեղեցին (կառուցվել է 1993–95–ին), կիրակնօրյա հայկ. դպրոց, մանկ. պարի համույթ ևն:

ՕԴԵՍԱՅԻ ՄԱՐՋ, վտմ Ուկրաինայում: Տարածքը՝ 33,3 հզ. *կմ*^{2}, բն.՝ 2,4 մլն (2013): Վարչ. կենտրոնը՝ *Օդեսա*:

ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՅԱՆ, կա-նոնավոր օդերևութաբան. դիտարկումներ կատարող հիմնարկ: Դիտարկումներն ընդգրկում են օդերևութաբան. տարրերի չափումներն ու մթն. երևույթների հիմն. բնութագրումները (սկիզբը, վերջը և լար-վածությունը): 1–ին օդերևութաբան. կա-յաններն ստեղծվել են դեռևս XVIII դ–ում, Հայաստանում՝ 1840–ական թթ–ին՝ Խա-չատուր *Աբովյանի* նախաձեռնությամբ:

Կանոնավոր օդերևութաբան. դի-տարկումներ կատարող կայանների և դիտակետերի համակարգը կազմում է օդերևութաբան. ցանց: Դիտարկումների արդյունքներն ուղարկվում են օդերևու-թաբան. ծառայություն, որտեղ տվյալները մշակվում են և ներկայացվում համապա-տասխան մարմիններին:

ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՇ-ԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՕՀԿ), ՄՄԿ–ին կից կազմ–յուն: Ստեղծվել է 1947–ին: Նպատակն օդերևութաբան. դիտարկումների և ուսումնասիրութ-յունների միջազգ. համագործակցութ-յան զարգացմանն աջակցելն է և ազգ. օդերևութաբան. ու ջրաօդերեւութաբան. ծառայությունների գործունեությունը համակարգելը: Բարձրագույն մարմինն Օդերևութաբան. համաշխ. կոնգրեսն է, որը գումարվում է 4 տարին մեկ (1–ինը՝ 1951–ին, Փարիզում): Աշտապես գործող մարմինը՝ Քարտուղարությունը, Ժնևում է: Անդամակցում է 185 երկիր: ՕՀԿ անդամ է նաև ՀՀ–ն:

ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գիտ-յուն մթն–ի և նրանում տեղի ունեցող շարժընթացների մասին: Օ–յան հիմն. բաժինը մթն–ի ֆիզիկան է, որն ուսում-նասիրում է մթն–ի ֆիզ. երևույթների և շարժընթացների ընդհ. օրինաչափութ-յունները:

ՕԴԻ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ, օդում ջր. գոլոր-շիների պարունակությունը՝ արտահայտ-ված բացարձակ և հարաբեր. արժեքնե-րով: Բնութագրիչ հիմն. մեծություններն են ջր. գոլորշիների առաձգականությունը, հագեցման առաձգականությունը, բա-ցարձակ խոնավությունը, տեսակարար ու հարաբեր. խոնավությունները, խո-նավության պակասորդը և ցողի կետը:

ՕԴԻ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ, օդի ջերմ. վիճա-կը բնութագրող մեծություն, եղանակի ու կլիմայի կարևոր տարր է: Տարբերում են օդի օրական, ամսական և տարեկան միջին, նվզգն, առլգն ջերմաստիճան-ներ, բազմամյա ամսական և տարեկան, միջին, բացարձակ առլգն ու բացարձակ նվզգն ջերմաստիճաններ, ջերմաստիճանի տատանման լայնույթ (ամպլիտուդ): Երկ-րագնդի վրա օդի նվզգն ջերմաստիճանը գրանցվել է Անտարկտիդայում (–93,2°C, 2013), առլգն՝ Մահվան հովտում (+56,7°C, 1913, ԱՄՆ, Կալիֆոռնիայի նահգ):

ՀՀ լեռն. բարդ ռելիեֆը, բարձր-յուն-ների տարբերությունները ծովի մակե-րևույթից, լ–լանջերի դիրքադրությունն զգալի ազդեցություն են թողնում Օ. ջ–ի բաշխման վրա: Յուրաքանչյուր 100 *մ* բարձրանալիս Օ. ջ. նվազում է 0,55°C–ով: Օդի տարեկան միջին ջերմաստիճաննե-րը տատանվում են 2,7–ից (Արագած բլկ) 13,8°C (Մեղրի): Ամենացուրտը հունվ–ին է (0,9–12,8°C), ամենատաքը՝ հուլիս-օգոստ–ին (25,8–9,2°C): Օդի նվզգն ջեր-մաստիճանը –42°C է (հաշվարկայինը՝ –46°C, Պաղակն գ., Ամասիա), առլգն՝ 43°C (Արարատ), ջերմաստիճանի փոփոխութ-յան լայնույթը՝ 85°C:

ՕԴՐԱ, **Օդեր** (չեխ. և լեհ.՝ Odra, գերմ.՝ Oder), գետ Արմ. Եվրոպայում: Երկ.՝ մոտ 854 *կմ*, ավազանը՝ 149 հզ. *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ 580 *մ*^{3}/*վ*: Սկիզբ է առնում Սուդետներից և թափվում Շչեցինի ծոցը (Բալթիկ ծով): Գլխ. վտակները՝ Բուբր, Նիսա-Լուժից-կա, Վարտա: Ջրանցքներով կապված է Էլբա և Վիսլա գետերին: Օ–ի ափերին են Օստրավա (Չեխիա), Օպոլե, Վրոցլավ, Շչեցին (Լեհաստան), Օդերի Ֆրանկֆուրտ (Գերմանիա) ք–ները:

ՕԵ Կենձաբուրո (ծ. 1935), ճապոնացի գրող: Հեղինակ է «Ուշացած երիտա-սարդություն» (1962), «Անձնական փորձ»

(1964), «Ֆուտբոլ 1860» (1967), «Մինչև հոգիս ինձ պաշարեցին ջրերը...» (հ. 1–2, 1973), «Հասակակիցների խաղերը» (1979), «Կյանքի ուղեկիցները» (1989), «Գեղեցկուհի Աննաբել Լիին» (2007) վեպերի, «Բոցավառվող կանաչ ծառը» (1993–95), «Կեղծ ժամանակ» (2000–05) եռերգությունների, նաև պատմվածքների ժողովների, վիպակների, «Նամակներ սիրելի անցյալին» (1987) ինքնակենսագր. երկի: Նորելյան (1994) և այլ մրց-ներ:

ՕԶԱԼ (Özal) Թուրգութ (1927–1993), Թուրքիայի նախագահ՝ 1989–1993-ին: 1980–82-ին՝ պետ. նախարար, 1983–89-ին՝ վարչապետ:

Արցախյան հարցում աչքի է ընկել կոշտ ու հավակնոտ դիրքորոշմամբ: 1992-ի մայիսին Նախիջևանի շուրջ իրադրության լարվածության ժամանակ հանդես է եկել ՀՀ-ին «մի փոքր վախեցնելու ցանկությամբ», իսկ Քելբաջարի ազատագրումից հետո հայտարարել է, թե «հայերը դաս չեն ստացել Անատոլիայում տեղի ունեցածից»:

ՕԶԱՆՅԱՆ Գագիկ (1882–1915), ազգ-ազատագր. պայքարի գործիչ, գրող: ***Անդրանիկի*** հորեղբոր որդին: 1909-ի ապրիլին՝ Ադանայի ջարդերի ժամանակ, կազմակերպել է Շապին-Գարահիսարի ինքնապաշտպ-յունը: Հեղինակ է «Հայապատում» (1912), «Պատմութիւն հայ լեզուի եւ բանահիւսութեան» (1913) գրքերի:

Ս. Իզմիրլյան գր. մրց.:

ՕԶԵՐՈՎ (Գոլդբերգ) Լև Ադոլֆովիչ (1914–1996), ռուս. բանաստեղծ: Հեղինակ է «Տեղատարափ անձրև» (1947), «Լուսաստվեր» (1961), «Երկրի առանցքը» (1986), «Կյանքի անդունդը», «Դիմանկարներ՝ առանց շրջանակների» (երկուսն էլ՝ 1996) քնարերգ. ժող-ների, «Վարպետություն և կախարդանք» (1973), «Բանաստեղծության կենսագրությունը» (1981), «Ռուսական պոեզիայի երկիրը», «Արվեստանոցի դուռը» (երկուսն էլ՝ 1996) աշխ-ների: Հայ. հրատարակվել է «Թռչնաբույր երկինք: Բանաստեղծություններ» (1985) ժող-ը:

ՕԶԵՐՈՎ Յուրի Նիկոլաևիչ (1921–2001), ռուս կինոռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1977): Ն. Ն. ***Օզերովի*** եղբայրը: Նկարահանել է «Կոչուբեյ» (1958), «Ազատագրում» (կինոհերոսապատում, 1970–72), «Ազատության զինվորները» (1977), «Ստալինգրադ» (1989) և այլ ֆիլմեր:

Լենինյան (1972), ԽՍՀՄ Պետ. (1982) մրց-ներ:

ՕԶԵՐՈՎ Նիկոլայ Նիկոլաևիչ (1922–1997), ռուս մարզ. մենկնաբան (1950–88): ԽՍՀՄ ս. վ. վ. (1947): ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1973): ԽՍՀՄ բազմակի չեմպիոն (թենիս, 1939–58): Յ. Ն. ***Օզերովի*** եղբայրը: 1992-ից՝ «Նիկոլայ Օզերով» ռադիոստուդիայի գեղ. ղեկ.: ԽՍՀՄ Պետ. մրց. (1982):

ՕԶՈԼԻՆ Նիկոլայ Գեորգևիչ (1906–2000), ռուս մարզիկ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1937), վ. մ. (1957): Մանկավարժ. գիտ. դ-ր (1972), պրոֆ. (1962): Յատկաձողով թռիչքի ԽՍՀՄ բազմակի չեմպիոն (1928–50): Ֆիզ. կուլտուրայի ՀամԳՀԻ տնօրեն (1954–62): Հեղինակ է «Մարզչի սեղանի գիրք» (2002) աշխ-յան:

ՕԶՈՆ (հուն.՝ Ozon – հոտավետ), O_3, թթվածնի ալոտրոպային ձևափոխությունը: Սուր հոտով կապույտ գազ է, $t_{եռ.}$՝ – 112°C, ուժեղ օքսիդիչ է: Մեծ կոնցենտրացիաների դեպքում քայքայվում է պայթյունով: Առաջանում է թթվածնի՝ O_2-ի էլ. պարպման (օր.՝ ամպրոպի) ժամանակ, ԱՄՁ-ման (օր.՝ մթն-ում) ազդեցությամբ: Օ-ի հիմն. զանգվածը մթն-ում տեղաբաշխված է ***օզոնային շերտում***, որը կենդանի օրգանիզմներին պաշտպանում է արևի կարճալիք ԱՄՁ-ից: Արդ-յան մեջ Օ. ստանում են օդում էլ. պարպմամբ: Օգտագործում են ջրի և օդի վարակազերծման համար:

ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏ, մթն-ում՝ վերնոլորտի 20–30 *կմ* (առլգն կոնցենտրացիան՝ 22–25 *կմ* սահմաններում) բարձր-ներում: Երկրի բևեռներում Օ. շ-ի ներքին սահմանն իջնում է մինչև 7–8 *կմ*, հասարակածում՝ բարձրանում մինչև 17–18 *կմ*: Վերնոլորտ. օզոնը ներգործում է մթն-ի ջերմ. ռեժիմի վրա, ակտիվացնում օքսիդացման շարժընթացները մթն-ում և կլանում է Արեգակի վնասակար կարճալիք ԱՄՁ-ման հիմն. մասը: 1985-ին Երկրի հվ. բևեռում հայտնաբերվել է օզոն. խոռոչ, որտեղ օզոնի քանակը կտրուկ (մինչև 50 %) նվազում է: Խոռոչներ առաջանում են մթն. արտանետված նյութերի (քլորֆտորածխածինների, հիդրոքլորֆտորածխածինների, մեթիլքլորոֆորմ, մեթիլբրոմիդ) քայքայող ազդեցությունից: Ընդունվել են Օ. շ-ի պահպանման միջազգ. փաստաթղթեր՝ «Օզոնային շերտի պահպանման մասին» Վիեննայի համաձայնագիրը (1985), «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրությունը (1997), որոնց անդամակցում է ՀՀ-ն 1999-ից և ստանձնել է համապատասխան պարտավորություններ:

ՕԶՈՆԱՐԱՔ, ջուրը վարակազերծող և օդն օզոնով հարստացնող ապարատ:

ՕԶՈՆԻԴՆԵՐ, ***օզոնի*** միացությունները: Անօրգ. Օ., օր.՝ KO_3-ը, ուժեղ օքսիդիչներ են:

ՕԹԱՆ–ԼԱՐԱ (Autant-Lara) Քլոդ (1903–2000), ֆրանսիացի կինոռեժ.: Նկարահանել է «Սատանայի մարմնացում» (1947), «Կարմիրը և սևը» (1954), «Փարիզով» (1956), «Դժբախտության դեպքում» (1958), «Մի սպանաներ» (1960), «Կարտոֆիլ» (1969), «Գլորիա» (1977) և այլ ֆիլմեր:

ՕԹՈՆ I (Otho,1815–1867), Հունաստանի թագավոր՝ 1832–62-ին՝ Վիտտելսբախների հարստությունից: Գահ է բարձրացել Ֆրանսիայի առաջարկությամբ, Մեծ Բրիտանիայի ու Ռուսաստանի համաձայնությամբ: Գահընկեց արվել 1862-ի հեղ-յան հետևանքով:

ՕԺԵ (Auger) Պիեռ Վիկտոր (1899–1993), ֆրանսիացի ֆիզիկոս: Հայտնաբերել է գրգռված ատոմի ինքնաիոնացման երևույթը (1925, Օժե-էֆեկտ), ընդարձակ մթն. հեղեղները տիեզ. ճառագայթներում (1938):

ՕԼԱՆԴ (Hollande) Ֆրանսուա (ծ. 1954), Ֆրանսիայի նախագահը՝ 2012–17-ին: Ֆրանսիայի սոց. կուս-յան 1-ին քարտուղար՝ 1997–2008-ին:

Ֆելիքս Ուֆուե-Բուանիի խաղաղության մրց., ՀՀ Փառքի շքանշան (2013, հայ-ֆրանս. ավանդ. բարեկամական հարաբերությունների ամրապնդման և զարգացման գործում անձն. մեծ ավանդի համար):

ՕԼԱՖ V (Olaf, Olav, 1903–1991), Նորվեգիայի թագավոր՝ 1957-ից՝ ***Գյուկսրուգների*** հարստությունից: 1939-ից՝ գեն. և ծովակալ: 1940–45-ին՝ վտարանդի Մեծ Բրիտանիայում: 1944-ի հունիս–1945-ի հուլիսին՝ «Մարտնչող Նորվեգիա» ԶՈՒ-ի գերագույն գլխ. հրամ.: 1955–57-ին՝ ռեգենտ:

ՕԼԱՖ ԹՐՅՈՒԳՎԱՍՈՆ (Olav Tryggvason, 963–մոտ 1000), Նորվեգիայի թագավոր՝ 995-ից: 990-ական թթ-ին մասնակցել է ***վիկինգների*** արշավանքներին՝ Բալթիկ ծովում և Բրիտ. կղզիներում: Ընդունել է քրիստոնեություն: Սպանելով Հոկոն թագավորին՝ գրավել է Նորվեգիայի գահը: Զոհվել է ծովամարտում:

ՕԼԱՖ ՀԱՐԱԼԴՍՈՆ (Olav Haraldsson, մոտ 995–1030), **Սուրբ Օլաֆ,** Նորվեգիայի թագավոր՝ Օլաֆ II անունով՝ 1015/16–28-ին: 1013–14-ի ձմռանը քրիստոնյա է մկրտվել Ռուանում, 1028-ին զրկվել է գահից և փախել Նովգորոդ: Սրբադասվել է 1164-ին:

ՕԼԱՖ ՇՅՈՏԿՈՆՈՒՆԳ (Olof Skötkonung, մոտ 980–1022), Շվեդիայի թագավոր՝ մոտ 995–1022-ին: Համարվում է Շվեդիայի 1-ին թագավորը և շվեդ. պետության 1-ին քրիստոնյա տիրակալը: Իրականացրել է Շվեդիայի քրիստոնեացման քաղ-յուն:

ՕԼԲԵՐՍ (Olbers) Հենրիխ Վիլհելմ (1758–1840), գերմանացի աստղագետ: Հայտնաբերել է 7 գիսավոր, Պալադա (1802) և Վեստա (1807) փոքր մոլորակները: Նշել է միջաստղ. միջավայրում լույսի կլանման հնարավորությունը (1826):

ՕԼԲԻ (Albee) Էդուարդ (1928–2016), ամերիկացի դրամատուրգ: Հեղինակ է «Պատմություն կենդանաբանական այգում» (1959), «Բեսսի Սմիթի մահը» (1959), «Ավազատուփ» (1959), «Ամերիկյան երազանք» (1960), «Ո՞վ է վախենում Վերջինիա Վուլֆից» (1962, հայ. բեմ.՝ 1984), «Բալլադ տխուր պանդոկի մասին» (1963), «Ամեն ինչ ավարտված է» (1970), «Երեք բարձրահասակ կանայք» (1994), «Այծը կամ Ո՞վ է Սիլվիան» (2002), «Տուն-տուն, ո՞վ է» (2003), «Փիթերը և Ջերին» (2004) և այլ պիեսների: Պուլիցերյան մրց. (1967, 1975):

ՕԼԴՐԻՆ (Aldrin) Էդվին (ծ. 1930), ԱՄՆ աստղագնաց, ՌՕՈՒ գնդ.: Թռել է «Ջեմինի-12» տիեզերանավով (Ջ. ***Լովելի*** հետ, 1966-ի նոյեմբ.), այդ ընթացքում դուրս է եկել բաց տիեզերք, նաև պատմության մեջ առաջինը թռել է (Ն. ***Արմսթրոնգի*** և Մ. ***Քոլինզի*** հետ) Լուսին, վայրէջք կատարել ու դուրս եկել Լուսնի մակերևույթ (Ն. Արմսթրոնգից հետո՝ 2-րդը, 1969-ի հուլիս): Նրա անունով է կոչվում Լուսնի չերևացող կողմի խառնարաններից մեկը:

ՕԼԴՐԻՋ (Aldridge) Ջեյմս (1918–2015), անգլիացի գրող: Հեղինակ է «Դիվանագետը» (1949) և «Լեռներ ու զենք» (1974) երկերգության, «Ծովային արծիվ» (1944, հայ.՝ 1977), «Վերջին աքսորյալը» (1961) վեպերի, «Ոսկի և ավազ» (1960) պատմվածքների ժող-ի, «Մնաս բարով, Հակաամերիկա» (1979) վեպ-պամֆլետի, «Վերջին դյույմը» (1957, հայ.՝ 1974) պատմվածքի, նաև վիպակների, հրապարակախոս. և գրաքննադատ. գործերի:

Լենինյան միջազգ. մրց. (1973):

ՕԼԵԻՆԱԹԹՈՒ, միահիմն չհագեցած կարբոնաթթու՝ $CH_3(CH_2)_7CH=CH(CH_2)_7COOH$: Անգույն մածուցիկ հեղուկ է, $t_{հալ.}$՝ 13,4°C: Էսթերների ձևով (տես ***Գլիցերիդներ***) պարունակվում է բուս. և կենդ. ճարպերում (օր.՝ ձիթապտղի յուղում՝ 54–81 %): Օ. և նրա էսթերները կիրառում են լաքաներկ. նյութեր ստանալու համար, որպես պլաստիկարարներ: Օ-ի աղերը մտնում են օճառի բաղադրության մեջ:

ՕԼԵՅՆԻԿ Բորիս Իլյիչ (1935–2017), ուկրաինացի բանաստեղծ, հաս. գործիչ: Ուկրաինայի հերոս (2005): Հեղինակ է

«Պողպատը կոփում են դարբինները» (1962), «Արձագանք» (1970), «Կանգնած եմ հողի վրա» (1973), «Կրակի նզովքը» (1978), «Չափ» քնար. բանաստեղծությունների և պոեմների ժող–ների, նաև հրապարակախոս. գործերի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1975):

ՕԼԵՆՅՈԿ, գետ ՌԴ Կրասնոյարսկի մարզում և Յակուտիայում: Երկ.՝ 2292 *կմ*, ավազանը՝ 220 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 1210 *մ³/վ*: Առաջացնելով դելտա՝ թափվում է Լապտևների ծովը: Սահանքավոր է:

ՕԼԵՇԱ Յուրի Կառլովիչ (1899–1960), ռուս գրող: Հեղինակ է «Երեք հաստլիկներ» (1924, հայ.՝ 1935, կինոնկար՝ 1967) հեքիաթ–վիպակի, «Նախանձ» (1927, հայ.՝ 1977) վեպի, «Բալի կորիզ» (1931) պատմվածքների ժող–ի, «Խստաբարո պատանին» (1934) կինոպիեսի, նաև ակնարկների, հուշերի, «Ամեն օր գոնե մի տող» (1961, հետմահու, հայ.՝ 1977) գրքի:

ՕԼԵՖԻՆՆԵՐ, **ալկեններ**, չհագեցած ացիկլիկ ածխաջրածիններ, որոնք մոլում պարունակում են մեկ կրկնակի կապ՝ C=C: Շարքի 1–ին անդամն էթիլենն է՝ CH_2=CH_2, այդ պատճառով Օ. կոչվում են նաև էթիլեն. ածխաջրածիններ: Պարունակվում են նավթի վերամշակված արգասիքներում և բնական գազերում: Օգտագործվում են պոլիմերների և այլ արժեքավոր արդ. արգասիքների սինթեզի համար:

ՕԼԹԻ (պատմ.՝ Ուղթեաց, վերին հոսանքում՝ Բողխա), գետ Հայկ. լ–աշխարհում, Ճորոխի աջ վտակը: Երկ.՝ 144 *կմ*: Սկիզբ է առնում Ծիրանյաց լ–ներից (Հայկ. հրաբխ. բարձրավանդակի արմ–ում), հոսում նեղ կիրճով մինչև Օլթի ք.: Մնումը ձնաանձրևային է: Ձախից ընդունում է Թորթումը և թափվում Ճորոխ գետը:

ՕԼԹԻ, Ուղթիք, ք. *Տայք* նահ–ի Ոքաղե գավ–ում՝ *Օլթիի* ափին: Հիշատակվում է X–XI դդ–ից: Եղել է Տայքի կյուրապաղատության կենտրոնը: Վերջինի վերացումից (1000) հետո նահ–ի հետ միացվել է Բյուզ. կայսրությանը: XVI դ–ից՝ Թուրքիայի տիրապետության ներքո: 1878–ին՝ *Կարսի մարզի* կազմում միացվել է Ռուս. կայսրությանը (1914–ին՝ 3,2 հզ. բն., որից 2,2 հզ–ը՝ հայ): Հայերն ունեցել են դպրոց, մի քանի վարժարան, Սբ Գևորգ և Սբ Հովհաննես եկեղեցիները: Ցարդ կանգուն է Օլթի գետի կամուրջը: 1918–ի ապրիլի 9–ին թուրքերը գրավել են քաղաքը, տեղահանել, կոտորել հայերին: 1920–ի հունիսին Օ. միացվել է ՀՀ–ին, զգալի թվով հայեր վերադարձել են: 1920–ի սեպտ–ին թուրք. զորքերը կրկին գրավել են Օ.: Հայ. բնակչության մեծ մասը գաղթել է Այսրկովկաս: 1921–ի մարտի 16–ի Մոսկվայի ռուս–թուրք. պայմանագրով Օ. Կարսի մարզի հետ տրվել է Թուրքիային: Ներկայում Օ. փոքր քաղաք է Էրզրումի իլում:

ՕԼԹՄԵՆ (Altmen) Սիդնի (ծ. 1939), ամերիկացի մոլ. կենսաբան: Աշխ–ները վերաբերում են նուկլեինաթթուների կենսասինթեզին: Հայտնաբերել է (Թ. Ռ. *Չեկի* հետ) ռիբոնուկլեինաթթուների (ռիբոզիմներ) ֆերմենտ. ակտիվությունը:

Նոբելյան մրց. (1989, Թ. Ռ. Չեկի հետ):

ՕԼԻԳԱՐԽԻԱ, (հուն.՝ Oligarchiy – քչերի իշխանություն), վարչակարգ, երբ քաղ. իշխանությունը պատկանում է անձանց նեղ շրջանակի (հարուստներ, զինվորականներ ևն):

ՕԼԻԳՈ... (հուն.՝ oligos – փոքրաքանակ, սակավ, աննշան), բարդ բառերի մաս. նշանակում է քիչ քանակություն, բնականոնից շեղում՝ դեպի նվազումը (օր.՝ օլիգոֆրենիա՝ *սակավամտություն*):

ՕԼԻԳՈՇԱՔԱՐՆԵՐ, ածխաջրեր, որոնց մոլ–ները կազմված են միաշաքարների 2–10 մնացորդներից: Տարբերում են, համապատասխանաբար, երկշաքարներ, եռշաքարներ ևն: Օրգանիզմներում առաջանում են բազմաշաքարների ֆերմենտ. քայքայման ժամանակ:

ՕԼԻԳՈՏՐՈՖ ԲՈՒՅՍԵՐ (< *օլիգո*... և հուն.՝ trophe – սնունդ), բույսեր, որոնք ունակ են աճելու սննդանյութերից աղքատ հողերում (օր.՝ ցաքին, փայլասենին, տորֆամամուռը):

ՕԼԻՄՊԻԱ, հինհուն. ք. Հելլադայում: *Զևսի* պաշտամունքի և օլիմպ. խաղերի անցկացման վայրը: Օ–ի ճարտ. համալիրն ստեղծվել է մ. թ. ա. VII–IV դդ–ում: Պեղումներով բացվել են Պելոպսի սրբավայրի (մ. թ. ա. II հզ–ամյակի վերջեր), *Հերայի* (մ. թ. ա. VII դ–ի վերջ), Զևսի (մ. թ. ա. 468–456) տաճարների մնացորդները, դաս. շրջանի մարզադաշտի ավերակները ևն. ավելի քան 130 արձան, մոտ 13 հզ. բրոնզե առարկաներ, 10 հզ. արձանագրություն ևն: Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՕԼԻՄՊԻԱԴԱ [հուն.՝ Olympias (Olympiados)], 1. Երկու *օլիմպիական խաղերի* միջև ընկած քառամյա ժամանակահատված: Թվականության միավոր Հին Հունաստանում (մինչև 394–ը): 1–ին Օ–ի տարին համարվում է մ. թ. ա. 776–ը: 2. Մեր ժամանակների խոշորագույն միջազգ. համալիր մարզ. մրցումներ (տես *Օլիմպիական խաղեր*): 3. Միցություններ, ստուգատես, մրցանակաբաշխություն (օր.՝ դպրոցականների մաթ. Օ.):

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ, Հին Հունաստանի *Օլիմպիայում* անցկացված համահուն. տոնախմբություններ և մրցումներ (ձիակառք, հնգամարտ, բռնցքամարտ, արվ–ների մրցություն): Կազմակերպվել են ի պատիվ Զևս աստծու մ. թ. ա. 776–ից Օլիմպիայում՝ 4 տարին 1 անգամ: Դադարեցվել են մ. թ. 394–ին: Որպես միջազգ. մարզ. մրցումներ՝ վերսկսվել են 1896–ից: I–ը՝ 1896–ին (Աթենք), II–ը՝ 1900–ին (Փարիզ), III–ը՝ 1904–ին (Սենտ Լուիս, ԱՄՆ), IV–ը՝ 1908–ին (Լոնդոն), V–ը՝ 1912–ին (Ստոկհոլմ), VII–ը՝ 1920–ին (Անտվերպեն), VIII–ը՝ 1924–ին (Փարիզ), IX–ը՝ 1928–ին (Ամստերդամ), X–ը՝ 1932–ին (Լոս Անջելես), XI–ը՝ 1936–ին (Բեռլին), XIV–ը՝ 1948–ին (Լոնդոն), XV–ը՝ 1952–ին (Հելսինկի), XVI–ը՝ 1956–ին (Մելբուռն), XVII–ը՝ 1960–ին (Հռոմ), XVIII–ը՝ 1964–ին (Տոկիո), XIX–ը՝ 1968–ին (Մեխիկո), XX–ը՝ 1972–ին (Մյունխեն), XXI–ը՝ 1976–ին (Մոնրեալ), XXII–ը՝ 1980–ին (Մոսկվա), XXIII–ը՝ 1984–ին (Լոս Անջելես), XXIV–ը՝ 1988–ին (Սեուլ), XXV–ը՝ 1992–ին (Բարսելոն), XXVI–ը՝ 1996–ին (Ատլանտա), XXVII–ը՝ 2000–ին (Սիդնեյ), XXVIII–ը՝ 2004–ին՝ (Աթենք), XXIX–ը՝ 2008–ին (Պեկին), XXX–ը՝ 2012–ին (Լոնդոն), XXXI–ը՝ 2016–ին (Ռիո դե Ժանեյրո), (VI–ը՝ 1916–ին, XII–ը՝ 1940–ին, XIII–ը՝ 1944–ին՝ չեն անցկացվել): Օ. խ–ի ծրագրում ընդգրկված են առավել տարածված մարզաձևերը: Հայ մարզիկները ԽՍՀՄ հավաքականի կազմում Օ. խ–ին մասնակցել են 1952–80–ին, 1988–ին: ՀՀ հավաքականն Օ. խ–ին մասնակցում է 1992–ից:

ՕԼԻՄՊՈՍ, Հունաստանի ամենաբարձր (2917 *մ*) լ–զանգվածն Էգեյան ծովի ափին: Ծածկված է մշտականաչ մացառուտներով, թփուտներով ու անտառներով: Ըստ հինհուն. դից–յան՝ համարվել է սրբազան լեռ, որի վրա բնակվել են աստվածները:

«ՕԼԻՄՊՈՍ», բժշկ., գր. ամսաթերթ (1926–28, Սալոնիկ, ապա՝ Աթենք): Խմբ.՝ Մ. Մալաքյան:

ՕԼԻՎԻԵ (Olivier) Լորենս Քեր (1907–1989), անգլիացի դերասան, ռեժ.: Խաղացել է 1922–ից: 1963–73–ին՝ Լոնդոնի Ազգ. թատրոնի ղեկ., Վ. Շեքսպիրի դերերի լավագույն մեկնաբաններից թատրոնում և կինոյում (Ռոմեո, Ռիչարդ III, Համլետ՝ «Ռոմեո և Ջուլիետ», «Ռիչարդ III», «Համլետ» ևն): Նկարահանվել է «Լեդի Համիլտոն», «Սպարտակ», «Կատակերգուն» և այլ կինոնկարներում: «Երեք քույր» (ըստ Ա. Պ. Չեխովի, 1970) ֆիլմի ռեժ–ն է: «Օսկար» մրց. (1946, 1949, 1979):

ՕԼԻՎԻՆ, կղզային սիլիկատների ենթադասի միներալ՝ $(Mg, Fe, Mn)_2$ $[SiO_4]$: Առաջացնում է հատիկավոր ագրեգատներ: Գույնը՝ տարբեր երանգների կանաչ: Կարծր.՝ 6,7, խտ.՝ 3,2–4,4 *գ/սմ³*: Օ–ի թափանցիկ տեսակները (քրիզոլիթ) կիրառվում են որպես թանկարժեք քարեր, մի մասը՝ որպես հրահեստ նյութերի հումք:

ՕԼԻՖՆԵՐ (հուն.՝ aleipha – քսուք, յուղ), բուս. յուղերի հիմքով թաղանթառաջացնող նյութեր, օր.՝ վուշի (բնական, կիսաբնական, համակցված Օ.), կամ ալկիդային (գլիֆտալային, պենտաֆտալային Օ.) խեժեր: Կիրառում են յուղային ներկերի պատրաստման և նոսրացման համար, ինչպես նաև փայտանյութի տոգորման համար՝ նախքան այդ ներկերով նրա մշակումը:

ՕԼԽՈՎՄԿԻ Գուրգեն Գուրգենի (ծ. 1933), ջերմաէներգետիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ–ր (1975), պրոֆ. (1997): ՌԳԱ թղթ. անդամ (2000): ԽՍՀՄ պատվ. (1983), ՌԴ վաստ. (2013) էներգետիկ, ՌԴ միացյալ էներգահամակարգի վաստ. աշխատող (1996): 1985–2010–ին՝ Համառուսաստանյան ջերմատեխ. ինստ–ի (Մոսկվա) տնօրեն, 2010–ից՝ նախագահ: Մշակել է երկէներգետիկ ջերմագազ. կայանքների տիպերի և լավագույն հարաչափերի ընտրության տես. հիմունքները, կազմակերպել կայանքների այդ տիպերի գլխամաս. բլոկների նախագծման և էլեկտրակայաններում դրանց իրացման աշխ–ներ:

ԽՍՀՄ ՆԽ (1978), ՌԴ Կառ–յան (1997, 2010) մրց–ներ, ՌԴ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2–րդ աստիճանի շքանշան (2013):

ՕԼՇԵՎՍԿԻ (Olszevski) Կարոլ Ստանիսլավ (1846–1915), լեհ ֆիզիկոս և քիմիկոս: 1883–ին Զ. Վրոբլեսկու հետ 1–ինն է ստացել չափելի քանակներով հեղուկ թթվածին, այնուհետև՝ հեղուկ ազոտ, ածխածնի օքսիդ, արգոն:

ՕԽԼՈՊԿՈՎ, Նիկոլայ Պավլովիչ (1900–1967), ռուս. ռեժ., դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1948): 1923–ից՝ Մոսկվայի Վ. Է. Մեյերհոլդի անվ. թատրոնում, 1930–37–ին ղեկավարել է Ռեալիստ. թատրոնը, 1943–66–ին՝ Վ. Վ. Մայակովսկու անվ. թատրոնի գլխ. ռեժ.: Բեմադրել է Ն. Ֆ. Պոգոդինի «Արիստոկրատներ» (1935), «Երիտասարդ գվարդիա» (ըստ Ա. Ա. Ֆադեևի, 1947), Եվրիպիդեսի «Մեդեա» (1961) և այլ գործեր: Նկարահանվել է «Լենինը հոկտեմբերին», «Լենինը 1918 թվականին», «Ալեքսանդր Նևսկի» և այլ ֆիլմերում: ԽՍՀՄ Պետ. մրց. [1941, 1947, 1949 (2), 1951 (2)]:

ՕԽՈՍ ԴԵ ՍԱԼԱԴՈ (Ojos del Salado), հանգած հրաբուխ Անդերի Գլխ. Կորդիլիերայում՝ Արգենտինայում: Բարձր.՝ 6900 *մ*:

ՕԽՈՏԻ ԾՈՎ, կիսափակ ծով Խաղաղ օվկ–ի հս–արմ. մասում: Շրջափակված է Ասիա մայրցամաքի արլ. ափով, Կամչատկա թ–կղզով, Կուրիլյան, Հոկայդո և Սախալին կղզիներով: Խաղաղ օվկ–ին միանում է Կուրիլյան, Ճապոն. ծովին՝ Լապերուզի և Նևելսկու նեղուցներով: Մակերեսը՝ 1603 հզ. *կմ²*, խոր.՝ մինչև 3521 *մ*: Խոշոր ծոցերը՝ Շելիխովի, Սախալինի, Անիվայի, Համբերության: Օ. ծ. է թափվում Ամուրը: Կան ձկնորսություն, նավագնացություն: Գլխ.նվինգստ-ները՝ Մագադան, Օխոտսկ, Կորսակով, Սևերո-Կուրիլսկ (ՌԴ):

ՕԽՈՑԻՄՍԿԻ Դմիտրի Եվգեննիչ (1921–2005), ռուս. մեխանիկոս: ՌԴԱ ակադ. (1991): Սոց. աշխ. հերոս (1961): Աշխ-ները վերաբերում են թռիչք. սարքերի դինամիկային և նրանց կառավարմանը: Լենինյան (1957), ԽՍՀՄ Պետ. (1970) մրց-ներ:

ՕԽՏԸ ԴՈՒՆԻ ՎԱՆՔ, ճարտ. համալիր Արցախ նհնգ–ի Դիզակ գվո–ում (այժմ՝ ԼՂՀ Հադրութի շրջան)՝ Սոխրենես գ–ից 3,5 *կմ* հս–արմ.՝ Յուղուսեն լ–ան լանջին: Կանգուն է միայն եկեղեցին (V–VI դդ.), գավիթն ավերակ է: Հոիփսիմեատիպ եկեղեցիների ինագույն օրինակ է. քառախորան, կենտրոնագմբեթ հորինվածք: Տարածքում են վան. աղբյուրը, «Քրոջ գերեզմանը» (եկեղեցին կառուցել է հայրենիքի համար զոհված 7 եղբայրների քույրը), նաև 2 խաչքար (997 և 1044):

ՕԾԱՆԵԼԻՔ, բուրավետ նյութերի խառնուրդի սպիրտ. (սպիրտաջր.) լուծույթներ, որոնցով բուրավետացնում են մարմնի տարբեր մասերը: Ըստ բուրավետ նյութերի կոնցենտրացիայի և հոտի կայունության՝ տարբերում են Օ. (perfum, extrait)՝ 15–30 % և ավելի (ըստ ծավալի) հոտավետ նյութերով, կայունությունը՝ 5–10 *ժ*, **պարֆյումներացված ջուր** (edu de perfum)՝ 10–25 %, 3–5 *ժ*, **օծանաջուր** (edu de toilette)՝ 5–15 %, 2–3 *ժ*:

ՕԾԿԱՎԱՆՔ, ճարտ. համալիր Արցախ նհնգ–ի Խաչեն գվո–ում (այժմ՝ գ. Բադարա՝ ԼՂՀ Ասկերանի շրջանում): Կառուցվել է վաղ միջնադարում, վերակառուցվել XII–XIII դդ–ում: Միանավ թաղածածկ բազիլիկ եկեղեցուն կից են 2 ավանդատներ, խորանի հս. պատի արտաքին շարվածքում պահպանվել են հնագույն եկեղեցու մնացորդների քանդակազարդ մասեր:

ՕԾՈՓԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ, ճարտ. համալիր Ճահուկ գվո–ի Օծոփ գ–ի (այժմ՝ գ. Բադամլու՝ Նախիջևանի ԻՀ Շահբուզի շրջանում) մերձակայքում: Կանգուն է, հիշատակվում է XIII դ–ից: Այժմյան եկեղեցին (1651) քառամույթ գմբեթավոր բազիլիկ է՝ կից փոքր գավթով (այժմ՝ ավերակ), ավանդատների մուտքերի վերևում ագուցված քանդակազարդ խաչքարերով (մեկին՝ Գրիգոր Լուսավորչի պատկերաքանդակն է):

ՕԾՈՒՄ, **օծություն**, *Սուրբ հոգով* օծվելը, կնքվելը կամ Սբ հոգու կնիքն իր վրա ընդունելը, որը կատարվում է *Հիսուս Քրիստոսի* Օծյալ Փրկչի անունով մկրտվելուց հետո: Օ. ի վերուստ սահմանված է Հիսուսին հավատացողների համար, ովքեր մաքրված են նրա քավչարար արյան և հրաշափառ Հարության զորության շնորհիվ: Սբ հոգու Օ. Աստծու Ուխտի հաստատումն է, որով քրիստոնյան կնքվում է որպես Աստծու ընտրյալ, և հաստատագրվում է նրա սրբացումը: Օ–ման տեսանելի, զգայելի դրսևորումը կամ նրա առարկայական խորհրդանշանը *մյուռոնն* է: Մյուռոնօծությունը կատարվում է ՀԱԵ 7 խորհուրդներից մեկի՝ դրոշմի արարողության ժամանակ:

ՕԿԱ, գետ ՌԴ–ում՝ Արլ. Սիբիրի հվ–ում, Անգարայի ձախ վտակը: Երկ.՝ 630 *կմ*, ավազանը՝ 34 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 274 *մ³/վ*: Լուղարկելի է, նավարկելի է ստորին հոսանքում:

ՕԿԱՋԱԿԻ, ք. Ճապոնիայի Հոնսյու կղզում: Բն.՝ 373,3 հզ. (2010):

ՕԿԱՅԱՄԱ, ք. Ճապոնիայի Հոնսյու կղզում, համանուն պրեֆեկտուրայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 704,9 հզ. (2010):

ՕԿԱՊԻ (Okapia), *ընձուղտների* ընտանիքի երկսմբակավոր կենդանի: Երկ.՝ մոտ 2 *մ*, մնդավի բարձր.՝ մինչև 1,2 *մ*, կ. զ.՝ մոտ 250 *կգ*: Սովոր. ընձուղտների համեմատությամբ պարանոցը և ոտքերը կարճ են: Ապրում է Կոնգո գետի ավազանի (Աֆրիկա) արևադարձ. անտառներում: Հազվագյուտ է. գրանցված է ԲՊՄՄ կարմիր գրքում:

ՕԿԻՆԱՎԱ, Ռյուկյու կղզեխմբի (Ճապոնիա) ամենամեծ կղզին: Տարածքը՝ 1254 *կմ²*, բն.՝ 1,3 մլն (2014): Բարձր.՝ մինչև 498 *մ*: 1945–72–ին Օ. և Ռյուկյու կղզեխմբի մյուս կղզիները եղել են ԱՄՆ–ի կառավարման ներքո:

ՕԿԼԱՀՈՄԱ, (Oklahoma), նհնգ ԱՄՆ–ում: Տարածքը՝ 181,1 հզ. *կմ²*, բն.՝ 3,85 մլն (2015): Վարչ. կենտրոնը՝ *Օկլահոմա Սիթի*:

ՕԿԼԱՀՈՄԱ ՍԻԹԻ (Oklahoma City), ք. ԱՄՆ–ում, Օկլահոմա նհնգ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 564 հզ. (արվարձաններով՝ 1,2 մլն, 2010): Զարգացած են բարձր տեխնոլոգիաները: ԱՄՆ ՌՕՈՒ հենակայան է:

ՕԿՏԱՆ, $CH_3(CH_2)_6CH_3$, սահման. ածխաջրածին, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 125,7°C: Պարունակվում է նավթում և սինթետիկ հեղուկ վառելիքում: Ունի ցածր ճայթուն. կայունություն (օկտան. թիվը՝ 17–19):

ՕԿՏԱՆԱՅԻՆ ԹԻՎ, ներքին այրման կարբյուրատոր. շարժիչներում օգտագործվող վառելանյութի դետոնացման հանդեպ կայունության պայման. քանակ. բնութագիր: Թվապես հավասար է իզոօկտանի (որի Օ. թ. ընդունված է 100) տոկոս. (ըստ ծավալի) պարունակությանը՝ n–հեպտանի (Օ. թ. հավասար է 0–ի) հետ նրա խառնուրդում, որը դետոնացման կայունությամբ համարժեք է ստանդարտ պայմաններում փորձարկվող վառելանյութին: Առավել տարածված մակնիշների ավտոբենզինների Օ. թ. 80–98 է, ավիաբենզիններինը՝ 91–92:

ՕԿՏԱՆՏ (լատ.՝ Octans), երկնքի հվ. կիսագնդի բևեռամերձ համաստեղություն՝ Տուկան, Հադիկ, Սիրամարգ, Դրախտ. Թռչուն, Քամելեոն, Մեղանասար, Հվ. Հիդրա համաստեղությունների միջև: Պայծառ աստղեր չունի: Օ–ում է աշխարհի հվ. բևեռը: ՀՀ տարածքից Օ. չի երևում:

ՕԿՏԵՏ (լատ.՝ octo – ութ), 1. ութ երաժիշտներից բաղկացած անսամբլ և նրա համար գրված երաժշտությունը:

ՕԿՏՈԳԵՆ, հզոր փշրտվող պայթուցիկ նյութ (*հեքսոգենի* նմանակն է), սպիտակ բյուրեղներ են: Պայթյունի ջերմությունը 4,3 *ՄՋ/կգ* է: Օգտագործվում է հանք. գործում՝ հատուկ նշանակման լիցքերում՝ շրջակա միջավայրի բարձր ջերմաստիճանների դեպքում (օր.՝ մեծ խոր–յունների նավթահորերի պայթախոռոչների ստեղծման համար):

ՕԿՈՒԼՅԱՐ (լատ.՝ ocularis – աչք), **ակնապակի**, դեպի դիտորդի աչքն ուղղված օպտիկ. համակարգ, որը մեծացնում է օբյեկտիվի կամ նրա և այլ համակարգերի, օր.՝ պրիզմաների համակցության տված պատկերը:

ՕԿՈՒԼՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (լատ.՝ occultus – գաղտնի, նվիրական), մարդու մեջ և տիեզերքում թաքնված, միայն հատուկ հոգեկան մարզումներ անցնող «ընտրյալներին» հասանելի «ուժերի» գոյությունն ընդունող ուսմունքների ընդհ. անվանումը: Փիլ. առումով ավելի մոտ է հիլոզոիզմին և *պանթեիզմին*: Ուսմունքը նշանակալի ազդեցություն է թողել դիտարկումների և փորձարար. մեթոդների զարգացման վրա (XIV–XVI դդ., Վերածննդի բնափիլ. ևն):

ՕԿՈՒՋԱՎԱ, Բուլատ Շալվովիչ (1924–1997), ռուս գրող: Մայրը՝ Վահան *Տերյանի* ազգականուհին էր: Հեղինակ է «Լիրիկա» (1956), «Կոզիներ» (1959), «Ուրախ թմբկահարը» (1964), «Մեծահոգի մարտ ամիսը» (1967), «Արբատ, իմ Արբատ» (1976) բանաստեղծությունների ժող–ների, «Մի կում ազատություն» (1971) վիպակի, նաև պատմ. թեմաներով երկերի, կինոսցենարների: Թարգմանել է Դ. Վարուժանի և ուր. գործերից: Հայ. հրատարակվել են «Գիշերվա զրույց» (2000), «Տողեր և տաղեր» (2008) բանաստեղծությունների ժող–ները:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1991):

ՕՀԱՅՈ (Ohio), գետ ԱՄՆ–ում, Միսսիսիպիի ձախ վտակը: Երկ.՝ 1580 *կմ*, ավազանը՝ 528,1 հզ. *կմ²*, ջրի միջին ծախսը՝ 8 հզ. *մ³/վ*:

ՕՀԱՅՈ, նհնգ ԱՄՆ–ում: Տարածքը՝ 106,8 հզ. *կմ²*, բն.՝ 11,6 մլն (2015): Վարչ. կենտրոնը՝ *Կոլումբուս*:

ՕՀԱՆԵՍՅԱՆ Ռոջեր Վահրամի (ծ. 1940), ակնարան, միկրովիրաբույժ: Կալիֆոռնիայի համալսարանի պատվ. պրոֆ. (1991): Աշխ-ները վերաբերում են աչքի հիվանդությունների ախտորոշման և բուժման մեթոդների մշակմանն ու կատարելագործմանը: Օ. 1992–ին ԱՄՆ–ում հիմնել է «Հայկական ակնաբուժական նախագիծ» բարեգործ. կազմ–յունը, որի հիմն. առաքելությունը ձեռքբերովի կուրության կանխարգելումն է: 2003–ին սկսել է «Լույս հայի աչքերին» իր յոթնամյա ծրագիրը, 2004–ից՝ ԱՄՆ–ի միջազգ. զարգացման գործակալության դրամաշնորհով իրականացրել է «Առաջնային և ակնաբուժական ծառայությունների դաշինքի» ծրագիր: Ամերիկ. վիրաբուժ. ակադ–ի անդամ:

Տարվա բարեգործ (Կալիֆոռնիա, 2002), ԱՄՆ–ի Էլիս կղզու շքանշան (2004):

ՕՀԱՆԵՍՈՎ, Էդուարդ Տիգրանի (1919–1988), ճարտարագետ, շինարար: Ուզբ. ԽՍՀ վաստ. շինարար (1968): 1969–88–ին՝ Նավոյիի հանքամետաղաձուլ. կոմբինատի նախագծի գլխ. ճարտարագետ: Մասնակցել է ուրանի, ոսկու ճյուղ. արդ–յան հանքարտադր. և հանքամշակման խոշորագույն ձեռն–ների նախագծմանն ու կառուցմանը, Բուխարայի մարզի անապատ. շրջանների յուրացման ու զարգացման աշխ–ներին: Լենինյան մրց. (1980):

ՕՀԱՆՅԱՆ Աշոտ Կարապետի (1934–1996), գրականագետ–քննադատ: Բանասիր. գիտ. դ–ր (1978): Հեղինակ է «Լեոյի գեղարվեստական ստեղծագործությունը» (1969), «Վրթանես Փափազյան» (1976) աշխ-ների:

ՕՀԱՆՅԱՆ Ավանես (Հովհաննես) Գրիգորի (1900–1961), ռեժ., սցենարիստ: Թեհրանում հիմնադրել է կինոյի (1930), Կալկաթայում (1937)՝ կինոդերասանի դպրոցներ: Նկարահանել է իրան. առաջին ֆիլմերը («Աբին և Ռաբին», 1930, «Հաջի աղան՝ կինոդերասան», 1934): Հեղինակ է սցենարների, թատեր. դրամաների:

ՕՀԱՆՅԱՆ Արայիկ Ջավենի, **Արզօ** (ծ. 1965), գրաֆիկ, ծաղրանկարիչ, նկարիչ-ձևավորող: Հեղինակ է գեղանկարների («Կոնդ», 1990, «Արևածաղիկով տղան», 1991, «Գյուղական պատկեր», 2002, ևն), ծաղրանկարների («Պետությունը ես եմ», 2000, «Արատավոր իշխանություն», 2008, «Հեռուստաթույն», 2008, ևն), գրքերի նկարազարդումների:

ՕՀԱՆՅԱՆ (Վարդյան) Արաքսի Գալուստի (1911–1981), դերասանուհի, ռեժ., թատեր. գործիչ: 1923-ից՝ Եգիպտոսում: 1927-ից խաղացել է թատրոնում [Սոնա՝ Շիրվանզադեի «Չար ոգի», Թեոֆիլ՝ Լ. Շանթի «Կայսր», Համլետ՝ Վ. Շեքսպիրի «Համլետ» (Սիրանույշից հետո երկրորդ հայ դերակատարուհին), ևն], գրել և բեմադրել է «Նշանվածները», «Գյուտին զոհը» և այլ պիեսներ, փոխադրել և բեմավորել է Լ. Ն. Տոլստոյի «Հարություն» և այլ երկեր:

ՕՀԱՆՅԱՆ (Տեր-Օհանյան) Արմեն (Փիրբուդաղյան Սոֆյա) Էմանուելի (1887–1976), պարուհի, դերասանուհի: 1909-ին՝ Թիֆլիսի օպեր. թատրոնի մենապարուհի: Թեհրանում (1910) հիմնադրել է Պարսկաստանում առաջին եվրոպ. տիպի թատրոնը (Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», Մարիա Անտոնովնայի դերում՝ Օ.): 1910–50-ին հոչակվել է արլ. պարերի կատարումներով («Հաշիշ», «Սալոմե» ևն): 1927-ից՝ Մեխիկոյում. հիմնադրել է պարի դպրոց (1936): Հեղինակ է «Շամախեցի պարուհին» (1920, Ա. Ֆրանսի առաջաբանով), «Երջանիկ Հայաստան» (1946, ժող.) և այլ գրքերի:

ՕՀԱՆՅԱՆ Գերման Արտաշեսի (ծ. 1939), ՀՏ բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1990), պրոֆ. (2001): ՀԽՍՀ վաստ. ճարտարագետ (1981): Աշխ-ները վերաբերում են փոքր ԷՀՄ-ների տեսության մշակմանը, նախագծմանն ու ստեղծմանը, խոշոր ԱԿՀ-ների օբյեկտների ավտոմատացման միջոցների տարրերի կառուցվածքի լավարկմանը, ծրագր. միջավայրի հետազոտություններին և համընդհ. համակարգչ. ծրագր. ապահովմանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1982):

ՕՀԱՆՅԱՆ Դավիթ Աշոտի (ծ. 1951), գենմայոր (2000): ԼՂՀ ազգ. անվտանգության պետ. վարչության պետ՝ 1998–2001-ին:

ՕՀԱՆՅԱՆ Կարինե Ռոբերտի (ծ. 1952), դաշնակահար: ՀՀ վաստ. արտիստ (1987): Պրոֆ. (1994): Հանդես է եկել որպես մենակատար, նաև նվագախմբերի հետ:

Միջազգ. մրցույթի 1-ին (1976, Վերչելլի, Իտալիա), ՀԼԿԵՄ (1978) մրց-ներ:

ՕՀԱՆՅԱՆ Պասկուալ (ծ. 1932), իրավաբան, պատմաբան: ՀՀ ԳԱԱ պատվ. դ-ր (1997): 1975–82-ին՝ Բուենոս Այրեսի ՀԲՀՄ Մարի Մանուկյան կրթ. հաստատության տնօրեն: Իսպ. հրատարակել է «Հայկական հարցը և միջազգային հարաբերությունները» (հ. 1–2, 1975), «Թուրքիան՝ ցեղասպան պետություն» (1986, հ. 1, ընդգրկում է Հայոց ցեղասպանությունը հավաստող փաստաթղթեր՝ թարգմանված հայ-ից, թուրք-ից, անգլ-ից, ֆրանս-ից, գերմ-ից) աշխ-ները:

ՕՀԱՆՅԱՆ Սեյրան Մուշեղի (ծ. 1962), ռազմ. գործիչ, ԼՂՀ ՊԲ գեն-գնդ. (2007): 1999–2007-ին՝ ԼՂՀ, 2008–16-ին՝ ՀՀ պաշտպ-յան նախարար: Արցախի հեռոս (1999): Քաղ. գիտ. թեկնածու (2012): 1993–94-ին՝ ԼՂՀ ՊՆ շտաբի պետ, 1999–2007-ին՝ ՊԲ հրամ., 2007-ից՝ ՀՀ ՋՈՒ ԳԾ պետ: Շուշիի ազատագրման ժամանակ (1992-ի մայիսի 8–9) ղեկավարել է Ջանհասան–Քյոսալար ուղղության ռազմագործողությունը, կազմակերպել (1992-ի օգոստ–սեպտ.) Մարտակերտի շրջանի, մասնավորապես՝ Սարսանգի հիդրոհանգույցի պաշտպ-յունը: Հեղինակ է «XXI դարի բանակը» (2007) գրքի:

ԼՂՀ «Ոսկե արծիվ» (1999), ԼՂՀ և ՀՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի, «Տիգրան Մեծ» շքանշաններ, ՀՀ ՊՆ «Դրաստամատ Կանայան», «Մարշալ Բաղրամյան – 100» և այլ մեդալներ:

ՕՀԱՆՅԱՆ (Օգանով) Սերգեյ Անդրեյի (Մամբրեի, 1921–1941), լեյտ.: ԽՄ հերոս (1943, հետմահու): 16 մարտիկների հետ՝ ՀՄՊ Հվ. ճակատի 317-րդ հրաձգ. դիվիզիայի կազմում, 1941-ի նոյեմբ. 17–18-ին Դոնի Ռոստովի Մեծ Սալա գ-ի մոտ ոչնչացրել է գերմ. 30 տանկ:

ՕՀԱՆՅԱՆ Սպարտակ Համլետի (ծ. 1955), ակնաբույժ: Բժշկ. գիտ. դ-ր (1993): Հանրապետ. լազեր. ակնաբուժ. կենտրոնի հիմնադիր-ղեկ.: Աշխ-ները վերաբերում են շաքարախտի ժամանակ աչքում առաջացող բարդությունների, հատկապես՝ շաքարախտ. ռետինոպաթիաների լազեր. կոագուլման մեթոդով բուժման հարցերին: ԱՀԿ «Շաքարախտը և նրա բարդությունները» միջազգ. ծրագրի ներկայացուցիչը ՀՀ-ում:

ՕՀԱՆՅԱՆ Վիկտոր Կարոյի (ծ. 1948), մաթեմատիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1998), պրոֆ. (2001): Աշխ-ները վերաբերում են ստոխաստիկ և ինտեգրալ երկրչփությունների, պատահական կետ. շարժընթացների, հավանականությունների տեսության և մաթ. վիճակագրության կիրառություններին:

ՕՀԱՆՅԱՆ Քաջիկ Մարտիրոսի (ծ. 1953), փիլ., սոցիոլոգ: Փիլ. գիտ. դ-ր (1991), պրոֆ. (1992): Աշխ-ները վերաբերում են սոցիալ. տեխնոլոգիայի տեսության և պրակտիկայի մշակման հիմնախնդիրներին, փոխակերպման ու արդիականացման հեռանկարներին:

ՕՀԱՆՅԱՆՑ Հրանտ Առաքելի (1918–1944), կապիտան: ԽՄ հերոս (1945, հետմահու): Հերոսի կոչման արժանացել է 1944-ի օգոստ. 24-ին Աժդահակ բնակավայրի (Ռումինիա) շրջանում Սերետ գետն անցնելու, նրա արմ. ափին հենակետ գրավելու և Ուզվելդ բնակավայրի ազատագրման մարտում ցուցաբերած խիզախության համար:

ՕՀԱՆՈՎ Ալեքսանդր Սերգեյի (ծ. 1956), նավթի և գազի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1998), պրոֆ. (1999): Աշխ-ները վերաբերում են նավթի ու գազի թեք և հորիզոն. հանքահորերի հորատման տեխնոլոգիային, մերձափնյա ծանծաղուտ. հանքավայրերի շահագործմանը, ծով. հորատմանը:

Տեղեկագիտ-յան միջազգ. ակադ-ի (1999), ՌԲՆԳԱ թղթ. (2002) անդամ:

ՕՀԱՆՈՎ Նիկոլայ Հովհաննեսի (1902–1966), ռադիոտեխ. բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1963): Աշխ-ները վերաբերում են հաղորդիչ սարքավորումներին, բարձրհաճախ. տատանումների մոդուլմանը, հզոր գեներատոր. լամպերին, մոլ. վակուում. պոմպերին, իմպուլս. հաղորդիչներին: Օ-ի ղեկավարությամբ 1953–56-ին նախագծվել և Խարկովի մերձակայքում կառուցվել է ԽՍՀՄ առաջին գծային արագացուցիչը: Լենինյան մրց. (1965):

ՕՀԱՆՈՎ Ռաֆայել Գեղամի (ծ. 1937), սրտաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1977), պրոֆ. (1986), ՌԲԳԱ ակադ. (2000, թղթ. անդամ՝ 1997-ից): ՌԴ գիտ. վաստ. գործիչ: 1982–88-ին՝ ԽՍՀՄ ԲԳԱ համամիութ. սրտաբան. գիտ. կենտրոնի կանխարգելիչ սրտաբանության ինստ-ի, 1988-ից՝ ԽՍՀՄ ԱՆ կանխարգելիչ բժշկության պետ. ԳՀ կենտրոնի տնօրեն: Հետազոտել է զարկերակ. գերճնշման, սրտի իշեմիկ հիվանդության, քրոնիկ. բրոնխաբորբի, շաքարախտի և դրանց հիմն. ռիսկի գործոնների տարածվածությունը Ռուսաստանի տարբեր շրջաններում: «Սիրտանոթային թերապիա և կանխարգելում» (ռուս., Մոսկվա) ամսագրի գլխ. խմբ.: ՌԲԳԱ գիտխորհրդի կանխարգելիչ բժշկության բաժանմունքի, ՌԲԳԱ առողջության ամրապնդման և հիվանդությունների կանխարգելման միջգերատեսչ. խորհրդի, Սրտաբանների համամիութ. գիտ. ընկ-յան (1999–2011) նախագահ:

ՌԽՖՍՀ Պետ. (1987), ՌԴ Կառ-յան (2008) մրց-ներ, ՌԴ «Պատվո նշան» շքանշան:

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ Արտեմ Սեդրակի (ծ. 1936), կինոռեժ., պատմաբան: 1938-ից՝ Թեհրանում: Վիեննայի համալսարանի դ-ր (1990), պրոֆ. (2004): ՀՀ ԳԱԱ պատվ. դ-ր (2001): Օ-ի սցենարներով նկարահանված վավերագր. և գեղ. ֆիլմերի մեծ մասը նվիրված է Հայկ. հարցին (1-ին մրց-ներ՝ 1972, Մադրիդ, 1988, Վիեննա): Նկարահանել է «Սերգեյ Փարաջանով. իմն է աշխարհը գեղեցիկ» գեղարվեստավավերագր. ֆիլմը (2-րդ մրց., 2001, Չիկագո): Հեղինակ է «Հայաստան. թաքուն ցեղասպանություն» (գերմ., 1989), «1915. անհերքելի վկայություններ» (գերմ., 1989, հայ.՝ 1997), «Հայկական հարցը և Գերմանիան ու Ավստրո-Հունգարիան» (գերմ., 2001) և այլ աշխ-ների: Կազմել է «Ավստրիա–Հայաստան» (հ. 1–4, 1988), «Ավստրիա–Հայաստան 1872–1936» (հ. 1–12, 1995), «Հայերի ցեղասպանությունը» (հ. 2, 1988, բոլորը՝ ըստ Ավստրիայի արխիվ. փաստաթղթերի) ժող-ներ:

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ Գուրգեն Հովհաննեսի (1902–1965), արդարադատության գեներալ-մայոր (1943): Եղել է Անդրկովկաս. ՋՕ-ի դատախազի օգնական: ՀՄՊ-ի ժամանակ ռազմաճակատների (Արմ., Ուկր. 2-րդ, Բելոռուս. 1-ին) դատախազի տեղակալ և օգնական: Լենինի, Կարմիր դրոշի, ՀՄՊ 1-ին աստիճանի շքանշաններ:

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ Էլվիրա Երվանդի (ծ. 1925), բժիշկ-ձևաբան: Բժշկ. գիտ. դ-ր: Աշխ-ները վերաբերում են ողնուղեղի փոխպատվաստման և արյան ձևաբան. առանձնահատկությունների ուսումնասիրությանը: 1990-ական թթ-ից՝ Օդեսայում:

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ Կոստանդին Սարգսի (1912–1991), ճարտ.: ՀՀ վաստ. ճարտ. (1972): Հեղինակ է Երևանում՝ Մալաթիա-Սեբաստիա շրջանի բնակելի համալիրի (համահեղ., 1982), Չարենցի փողոցում՝ Երկրը. վարչության շենքի, Աբովյան ք-ում՝ ՀՀ ԳԱԱ միկրոկենսբ-յան ինստ-ի,

Չարենցավանում՝ «Լիզին» գործարանի (1974) և այլ նախագծերի:

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ Համո (Համազասպ, կուս. անունը՝ Միհեր Միհերյան) Հովհաննեսի (1874–1947), քաղ., պետ. գործիչ, բժիշկ: ՀՅԴ անդամ: 1917-ին՝ Անդրկովկաս. կոմիսարիատի խնամատարության կոմիսար: 1918-ին գործել է Անդրկովկաս. Սեյմում: 1920-ի սկզբից՝ ՀՀ ԱԳ նախարար, 1920-ի մայիսի 5-ից մինչև նոյեմբ. 23-ը վարչապետ և ԱԳ նախարար: Նրա օրոք է կնքվել ***Սևրի հաշտության պայմանագիրը*** (1920), որով դե յուրե ճանաչվել է ՀՀ: Հայաստանում խորհրդ. իշխանություն հաստատվելուց հետո բանտարկվել է: Ազատվել է 1921-ի Փետր. ապստամբության օրերին: Տարագրվել է, ապրել է (1923-ից) Կահիրեում, զբաղվել բժշկությամբ: ***Համազգային հայ կրթական և մշակութային միության*** հիմնադիրներից է:

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ Շահեն Բագրատի (1928–1988), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1978), պրոֆ. (1982): Աշխ-ները վերաբերում են կոմերիտմիության և ԽՄԿԿ պատմության հարցերին:

Օ'ՀԵՆՐԻ (O'Henry), Փորթեր Ուիլյամ Սիդնի (1862–1910), ամերիկացի գրող: Հեղինակ է «Արքաներ և կաղամբ» (1904) երգիծ. վեպի, «Չորս միլիոն» (1906), «Վաղվող կանթեղ» (1907), «Արևմուտքի սիրտը» (1907) և պատմվածքների (մի մասը գրել է բանտում) այլ ժող-ների, որոնց հիմն. հերոսը «փոքր ամերիկացին» է: Հայ. հրատարակվել են «Ջոն Թոմ Փոքր Արջը» (1934), «Կարմրամորթների առաջնորդը» (1938) պատմվածքը, «Վերջին տերևը» (1962) պատմվածքների ժող-ը:

ՕՀՄ (Ohm) Գեորգ Սիմոն (1787–1854), գերմանացի ֆիզիկոս: Սահմանել է էլ. շղթայի հիմն. օրենքը (Օ-ի օրենք): Աշխ-ները վերաբերում են ձայնագիտ-յանը (Օ-ի ձայնագիտ. օրենք), բյուրեղաօպտիկային: Օ-ի անունով է կոչվել էլ. դիմադրության միավորը ՄՄՀ-ում, որը հաղորդչի այն դիմադրությունն է, երբ ծայրերին 1 *Ա* հոսանքի ուժի դեպքում առաջանում է 1 *Վ* լարում: Նշանակվում է *Ohm*:

ՕՀՄԻ ՕՐԵՆՔ, կապ է հաստատում էլշու չպարունակող շղթայի հաղորդչով անցնող հոսանքի ուժի և այդ հաղորդչի 2 ծայրերում պոտենցիալների տարբերության (լարման) միջև. հոսանքի ուժն ուղիղ համեմատական է լարմանը և հակադարձ համեմատական՝ հաղորդչի դիմադրությանը: Փակ չճյուղավորված շղթայի համար հոսանքի ուժն ուղիղ համեմատական է էլշուին և հակադարձ համեմատական՝ շղթայի լրիվ դիմադրությանը: Օ. օ. ճշմարտացի է հաստատուն և քվազիհաստատուն հոսանքների համար: Հայտնաբերել է Գ. Ս. *Օհմը* (1826):

ՕՁ (լատ.՝ Serpens), հասարակած. համաստեղություն՝ Կշեռք, Կույս, Եզնարած, Հս. Թագ, Հերկուլես, Արծիվ, Վահան, Աղեղնավոր համաստեղությունների միջև: Ամենապայծառ աստղը 2,6 *ա. մ.* է: Օ. բաղկացած է 2 մասից՝ «գլխից» և «պոչից», որոնց բաժանում է *Օձակիր* համաստեղությունը: Օ. երևում է ՀՀ ամբողջ տարածքից:

ՕՁԱԳԼՈՒԽ, պերկեսակերպների կարգի քաղցրահամ ջրերի ձուկ: Երկ.՝ մինչև 85 *սմ*, կ. զ.՝ մինչև 7 *կգ*: Արդյունագործ. ձուկ է:

ՕՁԱԿԵՐ ԱՐԾԻՎ, (Circaetus gallicus), **եվրոպական օձակեր**, *ճուռակների* ընտանիքի գիշատիչ թռչուն: Բնադրող է, չվող: Մարմնի երկ.՝ 62–67, թևերի բացվածքը՝ 185–195 *սմ*, կ. զ.՝ 1,5–2 *կգ*: Խոշոր թռչուն է՝ լայն գլխով, երկար ու լայն թևերով: ՀՀ-ում տարածված է Տավուշի մարզի, Գեղամա, Զանգեզուրի կիսաանապատ. նախալեռներում: Մնվում է հիմնականում թունավոր օձերով (գյուրզա, հայկ. իժ ևն): Բազմանում է «Խոսրովի անտառ» արգելոցում: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՕՁԱԿԻՐ (լատ.՝ Ophiuchus), հասարակած. մեծ համաստեղություններից՝ Օձ, Հերկուլես, Արծիվ, Աղեղնավոր և Կարիճ համաստեղությունների միջև: Առավել պայծառ աստղը 2,1 *ա. մ.* է: Երևում է ՀՀ ամբողջ տարածքից:

ՕՁԱՁԿՆԵՐ (Anguilliformes), ոսկր. ձկների կարգ: Երկ.՝ 10 *սմ*–3 *մ*, կ. զ.՝ 15 *գ*–65 *կգ*: Հայտնի է 23 ընտանիք, մոտ 400 տեսակ՝ արևադարձ. և բարեխառն ջրերում: Առավել հայտնի է եվրոպ. կամ սովոր. Օ., հասունն ապրում է Եվրոպայի և Հս. Աֆրիկայի առափնյա գետերում: Երկ.՝ 50–150 *սմ* (մինչև 2 *մ*), կ. զ.՝ 4–6 *կգ*:

ՕՁԱՊԱՐԱՆՈՑՆԵՐ (Anhinga), **ախինգաներ**, հավալուսնանմանների կարգի թռչունների ընտանիք: Երկ.՝ մինչև 100 *սմ*: Պարանոցը երկար է (այստեղից՝ անվանումը): Հայտնի է 2 (այլ տվյալներով՝ 5) տեսակ՝ արևադարձներում և մերձարևադարձներում՝ քաղցրահամ և սակավաղի ջրամբարներում:

ՕՁԱՊՈՉՆԵՐ (Ophiuroidea), **օֆիուրներ**, փշամորթների տիպի անողնաշար կենդանիների դաս: Մարմինը տափակ սկավառակ է (տրամագիծը՝ մինչև 10 *սմ*)՝ 5 (հազվադեպ՝ 10) շարժուն, երկար, օձի պոչ հիշեցնող ճառագայթներով: Հայտնի է 2 հզ. տեսակ: Ապրում են օվկ-ի և ծովերի հատակին (մինչև 8 *կմ* խոր-ներում):

ՕՁԵՐ (Ophidia կամ Serpentes), թեփուկավորների կարգի սողունների ենթակարգ: Երկ.՝ 8 *սմ*–10 *մ* (վիշապօձ), մարմինը՝ երկարացած, թեփուկներով ծածկված, վերջույթներ չունեն: Հայտնի է մոտ 3000 տեսակ, 13 ընտանիք՝ վիշապօձեր, լորտուներ, իժեր, ծով. Օ., ասպիդներ, բոժոժավոր Օ. ևն: Վարում են ցամաք., կիսաջր. և ծով. ապրելակերպ, սնվում են բացառապես կենդ. ծագման կերով (այդ թվում՝ լեշերով): Բազմանում են ձվադրությամբ, ձվակենդանածնությամբ կամ կենդանածնությամբ: Թույնն օգտագործվում է բժշկության մեջ: Թունավոր Օ. (մամբա, էֆա, գյուրզա, կոբրա ևն) վտանգավոր են մարդու և կենդանիների համար: Մաշկն արժեքավոր է: ՀՀ-ում հանդիպում են 4 ընտանիքի 23 տեսակի Օ.:

ՕՁՈՒՆԻ ՄՈՒԲԱՍՏՎԱԾՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ, ՀՀ Լոռու մարզի Օձուն գ-ում: Եկեղեցու կառուցումը վերագրում են Հովհաննես Դ Օձնեցուն (717–728), սակայն ճարտ-գեղ. վերլուծությամբ թվագրվում է VI դ-ի վերջ: Գմբեթավոր բազիլիկ է՝ խորանին կից ավանդատներով, եռանավ աղոթասրահով՝ 3 կողմից շրջափակված արտաքին սրահով: Հարուստ է պատկերաքանդակներով և զարդաքանդակներով, արտաքին ու ներքին պատերին՝ հայ. արձանագրություններ են: Գերեզմանատանը կան XIII–XX դդ-ի բազալտե տապանաքարեր, խաչքարեր: Եկեղեցին վերանորոգվել է 1938, 1949–50-ական թթ-ին, 1977, 2013-ին:

ՕՂԱԿԱՎՈՐ ՈՐԴԵՐ (Annelida), **անելիդներ**, *որդերի* տիպ: Մարմինը ներքին միջնորմներով բաժանված է հատվածների, որոնց համապատասխանում է արտաքին օղակավորությունը: Երկ.՝ մի քանի *մմ*-ից մինչև 3 *մ*: Հիմն. դասերը՝ բազմախոզան, սակավախոզան որդեր և տզրուկներ: Զարգացումն ուղղակի է (առանց կերպարանափոխության) կամ թրթուրով (տրոխոֆորա): Տարածված է ամենուրեք՝ ծովերում, քաղցրահամ ջրերում, հողում: Գիշատիչներ են, բուսակերներ, հազվադեպ՝ մակաբույծներ: Զկների կեր են: Հայտնի է 8 հզ. տեսակից ավելի:

ՕՂԱԿԱՎՈՐ ՓՈԿ (Nerpa), **ներպա**, իսկական փոկերի ընտանիքի ջր. կաթնասուն կենդանի: Երկ.՝ մինչև 1,6 *մ*, կ. զ.՝ մինչև 110 *կգ*: Ապրում է արկտիկ. ծովերում (ափերին մոտիկ) և Խաղաղ ու Ատլանտ. օվկ-ների հս-ում, Լադոգա (ՌԴ) և Սայմա (Ֆինլանդիա) լճերում: Արդյունագործ. փոկ է:

ՕՂԻ, **ցքի**, թունդ ալկոհոլ. խմիչք: Ստացվում է թորած էթիլ սպիրտը ջրի հետ խառնելով: Թողարկվում են 40, 50, 56 ծավալ. % սպիրտի պարունակությամբ Օ-ներ: Օ. ստանում են աշորայի, ցորենի, գարու, արմավի, խնկի, մեղրի, ինչպես նաև տարբեր պտուղների (թթի, հոնի, սալորի, բալի, դեղձի ևն) ու հատապտուղների խմորված քաղցուն թորելով: Թրմօղիներ ստացվում են տարբեր տեսակի սերմերին, համեմունքներին, արմատներին Օ. ավելացնելով և որոշ ժամանակ պահելով: Հայ մատենագրության (Ագաթանգեղոս, Կանոնագիրք Հայոց ևն) մեջ, մի շարք ինազույն ձեռագրերում, տեղեկություններ կան սպիրտի թորման և Օ. պատրաստելու եղանակների մասին:

ՕՂՈՒԶՆԵՐ (արաբ. և պարսկ.՝ գուզ, գուգզ, հին թյուրք.՝ օղուզ), թյուրքալեզու ցեղեր Կենտր. և Միջին Ասիայում: XI դ-ի կեսերին Օ-ի մի մասը բնակություն է հաստատել հվ-ռուս. տափաստաններում, մնացածը սելջուկ-թուրքերի գլխավորությամբ նվաճել է Առաջավոր Ասիայի երկրները: Օ. կարևոր դեր են ունեցել թուրքմենների, ադրբեջանցիների, թուրքերի, ինչպես նաև գագաուզների ու կարակալպակների էթնոգենեզում:

ՕՂՈՒԼԼՈՒԽՅԱՆ Հովակիմ (1746/49–1815/18), բժիշկ: Բժշկագիտ. դ-ր: Կ. Պոլսում զբաղվել է ժող. բժշկությամբ: «Նիւթ բժշկական…» (լատ.՝ 1785, հայ.՝ 1806) բժշկարան-դեղարանում շարադրված են բժշկության, բնական բուժիչ միջոցների և դեղորայքի օգտագործման, բուսաբուժության, սննդի հիգիենայի, շրջակա միջավայրի պահպանման հարցեր: Հեղինակ է «Ախտաբանություն» (լատ., 1783) երկհատոր աշխ-յան:

ՕՃԱՌԱԽՈՏ (Saponaria), **փրփրիկ**, մեխակազգիների ընտանիքի խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 30 տեսակ (Եվրասիայի բարեխառն գոտում), ՀՀ-ում՝ 3 (Արագածոտնի, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերում, Երևանի շրջակայքում): Արմատները դեղատու են (կոչվում են «կարմիր օճառարմատ»), միջատասպան է:

ՕՃԱՌԵՆԻ (Sapindus), օճառազգիների ընտանիքի մշտադալար և տերևաթափ ծառերի ցեղ: Ընդգրկում է շուրջ 15 տեսակ՝ տարածված Ասիայի և Ամերիկայի արևադարձ. շրջաններում: Պտուղները պարունակում են մինչև 38 % սապոնիններ և օգտագործվում են օճառի փոխարեն: Աշակվում է արևադարձ. տաք երկրներում՝ որպես գեղազարդիչ բույս և սապոնիններ ստանալու հումք:

ՕՃԱՌՆԵՐ, բարձրագույն ճարպաթթուների, ինչպես նաև նավթենա- և խեժաթթուների աղեր: Ստանում են կենդ. և բուս. ճարպերից, նավթենաթթուներից, բևեկնախեժից, հալայուղից: Ջրում լուծվող Օ. (սովորաբար՝նատրիում. և կալիում.) ունեն լվացող հատկություն և կազմում են ձեռքի, տնտ. և տեխ. Օ-ի հիմքը: Կիրառում են էմուլսիաների, սինթետիկ լատեքսների, փրփուրների կայունացման համար նև:

ՕՄԱՀԱ (Omaha), ք. ԱՄՆ Ներբրասկա նահց-ում: Բն.՝ 449 հզ. (արվարձաններով՝ 780 հզ., 2010): Կարևոր երկթղ. հանգույց է, սննդի արդ-յան և բարձրտեխնոլոգ. խոշոր կենտրոն:

ՕՄԱՅԱՆՆԵՐ, արաբ. խալիֆների հարստություն՝ 661–750-ին, սերել են Մեքքայի Օմայա արաբ. տոհմից: Հիմնադրել է Մուավիա I-ը: Օ-ի օրոք արաբները նվաճել են Հս. Աֆրիկան, Պիրենեյան թ-կղզու մեծ մասը, Միջին Ասիան և այլ տարածքներ: Օ-ի խալիֆության մայրաքաղաքը Դամասկոսն էր: Խալիֆ Աբդ ալ-Մալիքի (685–705) եղբայր Մուհամմադ իբն Միվանը վերջնականապես նվաճել է Հայաստանը և հարակից երկրները, որոնցից կազմվել է ***Արմինիա*** նահց-ը: Աբու Մուսլիմի ապստամբության (747–750) հետևանքով տապալվել են Օ., իշխանության գլուխ են անցել (750) ***Աբբասյանները***: Օ-ից Իսպանիա փախած Աբդ ալ-Ռահման I-ն այնտեղ հիմնադրել է Կորդովայի ամիրությունը՝ սկզբնավորելով Կորդովայի Օ. հարստությունը:

ՕՄԱՆ, **Օմանի սուլթանություն**, պետություն Արաբ. թ-կղզու արլ-ում: Սահմանակից է Սաուդյան Արաբիային, ԱՄԷ-ին և Եմենին: Տարածքը՝ 309,5 հզ. *կմ*^{2}, բն.՝ 2,84 մլն (2016): Մայրաքաղաքը՝ ***Մասկատ***: Պետ. լեզուն՝ արաբ.: Կառավարման ձևը՝ բացարձակ միապետ.: Պետության գլուխը սուլթանն է, գործող խորհրդակց. մարմինը՝ Օ-ի խորհուրդը: Կազմված է 4 նահանգապետությունից և 5 օկրուգից: Հավատացյալների մեծ մասը սուննի մահմեդական է: Անդամակցում է ՄԱԿ-ին, ԱՊԼ-ին ևն: Տնտ-յան հիմքը նավթի արդյունահանումն ու արտահանումն է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 23,9 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է նաև նավթամթերք, ձուկ, մետաղներ, տեքստիլ ևն, ներմուծում մեքենաներ և սարքավորումներ, սննդամթերք, քիմիկատներ, անասուններ ևն: Դրամ. միավորը՝ օմանյան ռիալ:

VII դ-ի կեսին Օ-ի տարածքը մտել է Արաբ. խալիֆության կազմի մեջ: Օմայանների տապալումից (750) հետո Օ-ի գերագույն կառավարիչ է դարձել իմամը, իսկ Օ.՝ անկախ պետություն (իմամություն): 1792-ին իմամի եղբայր սուլթան բին Ահմեդը զավթել է Օ-ի առափնյա շրջանները և հոչակել առանձին պետություն՝ Մասկատի սուլթանություն: Գրեթե միաժամանակ Օ-ի իմամությունից անջատվել են Պարսից ծոցի և Օրմուզի նեղուցի առափնյա որոշ տարածքներ, որոնք զավթել են ***վահաբականները***: Մինչև XIX դ-ի սկիզբը Օ-ի տարածքում եղել են առանձին միավորումներ՝ Օ-ի իմամությունը, Մասկատի սուլթանությունը և Օ-ի հս. առափնյա շրջանները («Ծովահենների ափ»): XIX դ-ի 2-րդ կեսին Մասկատը և «Ծովահենների ափը» դարձել են անգլ. պրոտեկտորատներ (Մասկատ և Պայմանագրային Օ., 1971-ից՝ ԱՄԷ): 1920-ի սեպտ. 25-ին անգլ. իշխանությունները և Մասկատի սուլթանն Օ-ի իմամությունը ճանաչել են անկախ պետություն: Մեծ Բրիտանիան 1955-ի աշնանը ներխուժել է Օ-ի իմամության տարածք և Մասկատի սուլթանի զինված ջոկատների հետ գրավել մի շարք քաղաքներ: Օ-ում սկսվել է ազատագր. պայքար, որին աջակցել են արաբ. երկրներն ու ՄԱԿ-ը: 1970-ի հուլիսին Մասկատի սուլթան դարձած Քաբուս բեն Սաիդը տարեվերջին հայտարարել է Օ-ի սուլթանության ստեղծման մասին, որը ներառել է Մասկատի սուլթանությունը և Օ-ի իմամությունը: 1996-ին ընդունվել է սահմանադրությունը:

ՕՄԱՆԻ ԾՈՑ, Արաբ. ծովի հս-արմ-ում: Հորմուզի նեղուցով կապված է Պարսից ծոցին: Երկ.՝ շուրջ 450 *կմ*, լայն.՝ մինչև 330 *կմ*, խոր.՝ մինչև 3694 *մ*: Գլխ. նվինգստո-ը՝ Մասկատ:

ՕՄԱՐ I, **Օմար իբն ալ Խաթթաբ** (մոտ 581–644), արաբ. խալիֆ՝ 634-ից: Արաբ. 1-ին խալիֆ ***Աբու Բեքրի*** խորհրդականը: Դրել է նվաճված երկրների կառավարման ու հարկահանության համակարգի հիմքերը, ստեղծել դատ., գինվ. ճամբար-ավանների համակարգ: Մտցրել է մահմեդ. թվականությունը՝ ***հիջրան***: Նրա օրոք արաբներն առաջին անգամ ներխուժել են Հայաստան, հասել մինչև Դվին, գրավել Չորրորդ Հայքը: Սպանել է պարսիկ ստրուկը:

ՕՄԱՐ II, **Օմար իբն Աբդ ալ-Ազիզ** (մոտ 682–720), խալիֆ՝ 717-ից՝ ***Օմայանների*** հարստությունից: Ձգտել է պահպանել Օմայան խալիֆության ամբողջականությունը: Անցկացրել է ոչ արաբ. ծագումով մահմեդ. բնակչության համար նպաստավոր հարկային բարեփոխումներ: Խստագույնս հետևել է Ղուրանի նորմերին:

ՕՄԱՐ ԽԱՅԱՄ (Ղիյասադդին Աբու Ֆաթհ իբն Իբրահիմ, մոտ 1048–1131), պարսիկ բանաստեղծ, փիլ., գիտնական: Օ. Խ-ին համաշխ. հռչակ են բերել նրա քառյակները («Ռուբայիներ», հայ.՝ 1953): Հեղինակ է նաև «Հանրահաշվի և ալմուկաբալայի մասին», «Էվկլիդեսի գրքի դժվար պոստուլատների մեկնաբանություններ» և այլ երկերի: Խայամագիտ-յան մեջ արժեքավոր ներդրում ունեն Է. Աղայանը, Ս. Ումառյանը:

ՕՄԱՐԻ ԼԵՌՆԱՆՅՔ, լ-անցք Մռավի լ-շղթայում, բարձր.՝ մոտ 3100 *մ* (Օմարի լ-ան բարձր.՝ 3395 *մ*): 1994-ի հունվ-փետր. ամիսներին Օ. լ-ում հայ-ադրբ. արյունալի բախումն ավարտվել է հայերի հաղթանակով. Քարվաճառի շրջանը վերջնականապես անցել է ԼՂՀ ՊԲ վերահսկողության տակ: Կռիվը տեղի է ունեցել 2500–3000 *մ* բարձ-յան վրա ցուրտ ձմռան պայմաններում:

Օ. լ-ում զոհվածների թվում էր Արցախի հերոս (հետմահու) Պետրոս ***Ղևոնդյանը***:

ՕՄԱՐՆԵՐ, տասնոտանի խեցգետնակերպների կարգի ծով. անողնաշարների ընտանիք: Արտաքուստ նման են գետ. խեցգետիններին: Հայտնի է 36 տեսակ, այդ թվում՝ եվրոպ. Օ. (երկ.՝ մինչև 65 *սմ*, կ. զ.՝ մինչև 11 *կգ*): Արդյունագործ. և բազմացման կենդանի են:

ՕՄԱԿ, ք-նվինգստո ՌԴ-ում՝ Իրտիշի և Օբի միախառնման վայրում, համանուն մարզի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,13 մլն (2009): Երկթղ. հանգույց է, արդ. կենտրոն: Հիմնադրվել է 1716-ին:

ՕՄՍԿԻ ՄԱՐԶ, վտմ ՌԴ Սիբիր. դաշն. օկրուգում: Տարածքը՝ 141,1 հզ. *կմ*^{2}, բն.՝ շուրջ 2 մլն (2014): Ունի 32 շրջան, 6 քաղաք, 21 քտա: Վարչ. կենտրոնը՝ ***Օմսկ***: Կազմավորվել է 1934-ի դեկտ. 7-ին:

ՕՄՈՒԼ (Omul), ***սիգեր*** ցեղի գաղթող ձուկ: Երկ.՝ մինչև 64 *սմ*, կ. զ.՝ մինչև 3 *կգ*: Ապրում է Հս. սառուցյալ օվկ-ում, Բայկալ լճում (կ. զ.՝ մինչև 7 *կգ*): Արդյունագործ. և բազմացման արժեքավոր ձուկ է: Թվաքանակը կրճատվում է:

ՕՅՍՏՐԱԽ Դավիդ Ֆեոդորովիչ (1908–1974), ռուս. ջութակահար: ԽՍՀՄ ժող. արտիստ (1953): Ջութակի ռուս. դպրոցի հիմնադիրներից: 1932-ից (ընդհատումներով)՝ Մոսկվայի ֆիլհարմոնիայի մենակատար: Հանդես է եկել նաև եռյակում (Լ. Ն. ***Օբորինի*** և Ս. Ն. Կնուշևիցկու հետ): 2006-ից Մոսկվայում անցկացվում է ջութակահարների Օ-ի անվ. միջազգ. մրցույթ, Էստոնիայում՝ ամենամյա երաժշտ. փառատոն:

ԽՍՀՄ Պետ. (1943), ջութակահարների Է. Իզաիի անվ. միջազգ. մրցույթի 1-ին (1937, Բրյուսել), Գ. Վենյավսկու անվ. մրցույթի 2-րդ (1935, Վարշավա), Լենինյան (1960) մրց-ներ: Որդին՝ **Իգոր Օ.** (ծ. 1931), ջութակահար, դիրիժոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1989): Երիտասարդության և ուսանողության համաշխ.. փառատոնի (1949, Բուդապեշտ), Գ. Վենյավսկու անվ. (1952, Պոզնան) ջութակահարների միջազգ. մրցույթների 1-ին մրց-ներ:

ՕՆԱՍԻՍ Արիստոտել Սոկրատես (1906–1975), հույն ձեռնարկատեր, նավատեր, աշխարհի ամենահարուստ մարդկանցից:

ՕՆԴԱՏՐԱ, տես ***Աշկամուկ***:

ՕՆԵԳԱ ԼԻՃ (հին ռուս.՝ Օնեգո), ՌԴ եվրոպ. մասի հս-արմ-ում՝ Կարելիայում, Լենինգրադի և Վոլոգդայի մարզերում: Մակերեսը (առանց կղզիների)՝ 9,7 հզ. *կմ*^{2}, խոր.՝ մինչև 127 *մ*: Վերին Սվիրի ջրէկ-ի կառուցմամբ վերածվել է ջրամբարի (մակերեսը՝ 9950 *կմ*^{2}): Բալթյան ջրանցքով միացած է Բալթիկ և Սպիտակ ծովերին, Վոլգա-Բալթյան ջրանցքով՝ Վոլգայի ավազանին: Օ. լ-ի կիժի կղզում է ժող. փայտե ճարտ. հուշարձանների թանգարան-արգելոցը: Լճի ափերին են Պետրոզավոդսկ, Կոնդոպոգա, Մեդվեժիեգորսկ ք-ները:

Օ'ՆԻԼ, Օ'Նեյլ (O'Neill), Յուջին (1888–1953), ամերիկացի դրամատուրգ: Հեղինակ է «Հորիզոնից այն կողմ» (1920), «Սերը ծփինների տակ» (1924, հայ.՝ 1983, հայ. բեմ.՝ 1928), «Երկար օրը ձգվում է մինչև կեսգիշեր» (1941, բեմ.՝ 1956) պիեսների, «Սուգը Էլեկտրայի ճակատագիրն է» (եռերգություն, 1931), «Սառցավաճառն անջնում է» (1939, հրտ.՝ 1946) առասպելաբան. և այլաբան. դրամաների: Նոբելյան մրց. (1936):

ՕՆԻԽՈՖՈՐՆԵՐ (Onychophora), **առաջնատախեայիններ**, ցամաք. անողնաշար կենդանիների տիպ (մոտ 70 տեսակ): Որդանման են, երկ.՝ մինչև 10–15 *սմ*: Բաժանասեռ են, կենդանածին: Տարածված են Հվ. կիսագնդի արևադարձ. և մերձարևադարձ. գոտիներում: Ապրում են անտառի խոնավ փոռոցի մեջ, քարերի տակ: Չոր տեղերում խրվում են հողի մեջ:

ՕՆԿՈԳԵՆԵԶ, տես ***Ուռուցքածնություն***:

ՕՆՍԱԳԵՐ (Onsager) Լարս (1903–1976), ամերիկացի (ծագումով՝ նորվեգացի) ֆիզիկոս-տեսաբան և քիմիկոս, անհավասարակշիռ շարժընթացների թերմո-

դինամիկայի ստեղծողներից: 1928–ից՝ ԱՄՆ–ում: Հայտնաբերել է (1931) անհավասարակշիռ թերմոդինամիկ. շարժընթացները բնութագրող՝ իր անունով հայտնի թեորեմը: Արտածել է էլեկտրոլիտների էլեկտրահաղորդականության հավասարումը (1926): Մշակել է հարթ ցանցի թերմոդինամիկ. հատկությունների տեսություն, զարգացրել ***ֆազային անցումների*** վիճակագր. տեսությունը:

Նոբելյան մրց. (1968):

ՕՆՍՈՐ (Ունսոր) **ԱԼ ՄԱԱԼԻ** Քեյ Քավուս (1021–1098), պարսիկ գրող: Հեղինակ է «Ղաբուս–Նամե» բարոյախրատ. առակների ժող–ի, որը ֆարսի լեզվով առաջին արձակ ստեղծագործությունն է:

ՕՆՏԱՐԻՈ (Ontario), լիճ ԱՄՆ–ում և Կանադայում՝ Մեծ լճերի համակարգում: Մակերեսը՝ 19,5 հզ. *կմ*^{2}, խոր.՝ մինչև 236 *մ*: Օ. է թափվում Նիագարա գետը, սկիզբ է առնում Սբ Լավրենտիոս գետը: Նավարկելի Ուելենդ ջրանցքով միանում է Էրի լճին, Էրի ջրանցքով՝ Հուդզոն գետին: Օ–ի ափերին են Տորոնտո, Համիլտոն, Քինգսթոն (Կանադա), Ռոչեստր (ԱՄՆ) ք–նվինգստ–ները:

ՕՆՏԱՐԻՈ, պրովինցիա Կանադայում: Տարածքը՝ 1068,6 հզ. *կմ*^{2}, բն.՝ 13,9 մլն (2015): Վարչ. կենտրոնն ու խոշորագույն ք.՝ ***Տորոնտո***:

ՕՆՏՈԳԵՆԵԶ (< հուն. on, սեռ. հոլ.՝ ontos – գոյ և ...***գենեզ***), օրգանիզմի անհատ. զարգացումը՝ սկզբնավորումից մինչև մահ կրած փոփոխությունների ամբողջությունը:

ՕՇ, ք. Ղրղըզստանում՝ Ակ Բուրա գետի ափին: Բն.՝ 251 հզ. (2016): Երկաթղ. կայարան է: Հայտնի է IX դ–ից:

ՕՇԱԿ, նեխուրազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է 16 տեսակ, ՀՀ–ում՝ 1 (Հարավայսրկովկաս. բնաշխարհիկ է)՝ Արարատյան գոգավորության հվ–արլ–ում, Վայոց ձորի, Արարատի և Կոտայքի մարզերում: Դեղաբույս է:

ՕՇԱԿԱՆ (Քյուֆեճյան) Հակոբ Հովհաննեսի (1883–1948), գրող, գրականագետ, խմբ.: Վաhեե *Օշականի* հայրը: 1914–ին՝ ***«Մեհեան»*** (Կոստան Զարյանի, Գեղամ Բարսեղյանի հետ), 1922–ին՝ «Բարձրավանք» հանդեսների խմբ.: Հեղինակ է «Խոնարհները» (1920), «Երբ պատանի են» (1925) պատմվածքների, «Խորհուրդներու մեհեանը» (1922) հեքիաթների, արձակ բանաստեղծությունների, «Երբ մեռնիլ գիտենք» (1944), «Երեք թատերախաղեր» (հրտ.՝ 1991) պիեսների ժող–ների, «Մնացորդաց» (հ. 1–3, 1932–34), «Սահակ Պարգևեան» (հրտ.՝ 1985), «Սիւէյման էֆէնտի» (հրտ.՝ 1985) վեպերի, «Համապատկեր արևմտահայ գրականութեան» (հ. 1–10, 1945–82), «Արևելահայ բանասիրութիւնը եւ Էջմիածինը» (1948), «Արևելահայ դէմքեր» (հրտ.՝ 1999) և այլ աշխ–ների:

ՕՇԱԿԱՆ Վահե Հակոբի (1922–2000), գրող, խմբ., մանկավարժ: Հակոբ ***Օշականի*** որդին: 1987–2000–ին՝ «Ռաֆֆի. Ձրե՛նըլ օֆ Արմինիըն Փոեթրի ը՛նդ Քրիթիսիզմ» (անգլ.) հանդեսի հիմնադիր–խմբ.: Հեղինակ է հայության տագնապները պատկերող «Քառուղի» (1971), «Ահազանգ» (1980), «Խուճապ» (1983), «Արուարձաններ» (1991) և այլ բանաստեղծությունների, «Թակարդին շուրջ» (1988), «Սերունդներ» (1995), «Ինքնութիւն» (1996) պատմվածքների ժող–ների, «Անգլիական ազդեցությունը արևմտահայ գրականության վրա» (անգլ., 1982) մենագրության:

«ՕՇԱԿԱՆ», գր–գեղ. կիսամսյա հանդես (1920–21, Փարիզ): Տնօրեն–խմբ.՝ Արտաշես Հովհաննիսյան:

«ՕՇԱԿԱՆ», կրոն., ազգ., մշակութ. պարբերաթերթ (1981–89, Հալեպ): Հայ եկեղեցու Բերիո թեմի ազգ. առաջնորդարանի հրտ–յուն: Խմբ.՝ Խաչիկ Շահինյան:

ՕՇԱԿԱՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 336, 1827, 1. հայոց բանակի և Մազքթաց Արշակունի թագավոր Սանեսանի միջև, որը 335–ին գրավել էր Վաղարշապատ մայրաքաղաքը: 336–ին հայկ. բանակը ***Վաչե Մամիկոնյանի*** գլխավորությամբ հետ է վերցրել այն և Օշական բերդի կողմերում պարտության մատնել մազքթաներին: Սանեսանը սպանվել է: 2. Ռուս. և պարսկ. զորախմբերի միջև՝ 1826–28–ի ռուս–պարսկ. պատերազմի ժամանակ: Պարսկ. զորքը (30 հզ. զինվոր, 24 թնդանոթ) ***Աբբաս Միրզայի*** հրամանատարությամբ օգոստ. 6–ին գրավել է Աշտարակը, 15–ին պաշարել Էջմիածինը: Ռուս. գեն. Ա. Կրասովսկին օգոստ. 16–ին 3 հզ–անոց զորախմբով (այդ թվում՝ 100 հայ, 40 վրացի աշխարհազորայիններ) և 12 թնդանոթով Ապարանի սարահարթից շարժվել է դեպի Էջմիածին: Ճակատամարտն սկսվել է օգոստ. 17–ին Օշական գ–ից 2 *կմ* հեռու՝ Քասաղի կիրճում: Մարտի վճռ. պահին պարսկ. բանակում ծառայող թնդանոթաձիգ Հակոբ Հարությունյանը թիկունքից ռմբակոծել է պարսից դիրքերը: Օգտվելով հակառակորդի շարքերում առաջացած խուճապից՝ ռուսները ճեղքել են պարսկ. զորաշղթան և մտել Էջմիածին: Օ. ճ–ում ռուսներից զոհվել են 1131–ը (200–ը անհետ կորած), պարսիկներից՝ 3000–ից ավելի: 1833–34–ին, ճարտարագետ–պրուչիկ Կոպանեյսկու նախագծով, ճակատամարտի վայրում կառուցվել է ռուս զոհերի հիշատակը հավերժացնող կոթող:

ՕՇԱԿԱՆԻ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑԻ, ճարտ. հուշարձան ՀՀ Արագածոտնի մարզի Օշական գ–ում: Արագածոտնի թեմի առաջնորդանիստ եկեղեցին է (1996–ից): 443–ին կառուցել է իշխան Վահան Ամատունին՝ Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի վրա: Նոր եկեղեցին (1875–79) գմբեթավոր բազիլիկ է՝ արլ–ում խորշով, երկհարկ գլանաձև զանգակատնով (1884), հս. և հվ. մուտքերով: Ներսը վերանորոգումից (1963–65) հետո հարդարվել է որմնանկարներով (Հենրիկ Մամյան, Հովհաննես Մինասյան), դամբարանի մուտքի մոտ մեսրոպյան այբուբենի երկաթագիր տառերով կոթողն է, բակում՝ Վահան Ամատունու շիրմաքարը (կառուցվել է 1884–ին), խաչքար–տառերը (2006, քանդ.՝ Ռ. Նալբանդյան): 1995–ին նախկին դպրոցի վերակառուցված շենքում բացվել է «Սբ Մեսրոպ Մաշտոց–Սբ Սահակ Պարթև» դպրատունը (ճարտ.՝ Բ. Արզումանյան), 1997–ին նախկին ուսուցչի տունը վերակառուցումից հետո դարձել է առաջնորդարան (ճարտ.՝ Վ. Բաբախանյան):

ՕՇԱԿԱՆՑԻ (Սարգսյան) Արթուր Համազասպի (ծ. 1953), նկարիչ: Գործերում նկատելի են տարբեր ուղղությունների (ռեալիզմ, սյուրռեալիզմ, աբստրակցիոնիզմ) և ոճերի տարրեր («Տիեզերքի նկարիչը», 1973, «Բնության ներդաշնակություն», նկարաշար, 1981–82, «Մարդ, կին, անկողին», 1991, «Ժամանակ և տարածություն», նկարաշար, 2004–05, ևն): 1992–ից՝ Լոնդոնում: 2003–ին ԱՄՆ «Մետրոպոլիտեն» թանգարանը Օ–ին համարել է արստրակտ նատուրալիզմի հիմնադիր: Լոնդոնի «Գրով» թանգարանի Մեծ մրց. (2004):

ՕՇԱՆ (Salsola), **շոռան**, թելուկազգիների ընտանիքի միամյա կամ բազմամյա թփերի, կիսաթփերի, հազվադեպ՝ ծառերի ցեղ: Հայտնի է մոտ 200 տեսակ (Եվրասիայի և Աֆրիկայի աղուտներում), ՀՀ–ում՝ 11 (Արարատի, Արմավիրի, Վայոց ձորի, Սյունիքի և այլ մարզերում): ՀՀ տեսակներից Թամամշյանի Օ. Հայաստանի նեղ բնաշխարհիկ է: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՕՇԱՎԱ (Oshawa), ք. Կանադայի հվ–ում՝ Օնտարիո լճի հս. ափին: Բն.՝ 292 հզ. (2010):

ՕՇԻՆ (ծ. թ. անհտ–1329), Կիլիկիայի հայոց սպարապետ, Կոռիկոսի բերդատեր իշխան, 1320–ից՝ հայոց պայլ (թագավորահայր): ***Հեթում*** պատմիչի որդին: ***Օշին Ա***–ի մահից հետո ստանձնելով նրա 10–ամյա գահաժառանգ ***Լևոն Ե***–ի խնամակալությունը՝ կառավարել է երկիրը: 1323–ին Կահիրեում Եգիպտոսի սուլթանության հետ կնքել է հաշտության պայմանագիր: Սպանվել է չափահաս դարձած Լևոն Ե–ի հրամանով՝ նրա լատինամետ քաղ–յանն ընդդիմանալու պատճառով:

ՕՇԻՆ Ա. (ծ. թ. անհտ–1320), Կիլիկիայի հայոց թագավոր՝ 1308–ից: ***Հեթում Բ***–ի եղբայրը: Հաջորդել է ***Լևոն Դ***–ին: Օ. Ա–ի արևմտամետ (լատինամետ) վարքագիծը երկրում սրել է պառակտումները, թուլացրել կենտր. իշխանությունը: 1318–ին Եգիպտոսի սուլթանության զորքերը ներխուժել են Կիլիկիա, որոնց հայկ. զորքերը Կոռիկոսի տեր ***Օշինի*** հրամանատարությամբ դուրս են մղել: Հանկարծամահ եղած Օ. Ա–ին հաջորդել է նրա մանկահասակ որդի ***Լևոն Ե***–ն:

ՕՇԻՆԴԲ (Artemisia), **բարձվենյակ**, աստղածաղկազգիների (բարդածաղկավորներ) ընտանիքի խոտաբույսերի կամ կիսաթփերի ցեղ: Հայտնի է մոտ 300 (400) տեսակ, ՀՀ–ում՝ 16՝ բոլոր մարզերում: Աշակության մեջ տարածված է թարխունը, օգտագործվում է որպես համեմունք. բույս (թարմ և չորացված): Հայկ. Օ–ից պատրաստում են ավել:

ՕՇԿՎԱՆԴ, ճարտ. համալիր Տայք՝նինգ–ի Ազորդաց Փոր գվթ–ի Օշկ գ–ում (այժմ՝ Թուրքիայի տարածքում): Կառուցել են իշխանաց իշխան Բագրատն ու Դավիթ Կյուրապաղատը 951–961–ին: Խաչաձև, եռախորան գմբեթավոր կառույց էր՝ կից կամարապատ սրահով, 3 թևերի ճակատները և գմբեթի թմբուկը ձևավորված էին դեկորատիվ կամարաշարով: Վերածվել է մզկիթի:

ՕՈԳԱՄԻՆ (< հուն. oon – ձու և gamos – ամուսնություն), սեռ. գործողություն, երբ բեղմնավորմանը մասնակցում են սերմնաբջիջը և ձվաբջիջը: ***Հետերոգամիայի*** բարձրագույն աստիճանն է: Բնորոշ է բազմաբջիջ կենդանիներին, մի շարք ստորակարգ և բոլոր բարձրակարգ բույսերին:

ՕՈԳԵՆԵԶ (< հուն. oon – ձու և ...***գենեզ***), իգական սեռ. բջիջների՝ ձվաբջիջների (ձու) առաջացումը մարդու և կենդանիների ձվարաններում, բույսերի ***օոգենիումներում***, արքեգոնիումներում կամ սաղմն. պարկում:

ՕՈԳՈՆԻՈՒՄ (< հուն. oon – ձու և gone – ծնել), 1. մի շարք ջրիմուռների և ստորա-

կարգ անկերի իգական, սովորաբար՝ միաբջիջ, հազվադեպ՝ բազմաբջիջ սեռ. օրգան: 2. Իգական սաղմն. բջիջ, որն սկիզբ է տալիս իգական գամետին՝ ձվաբջջին:

ՕՈՐՏ (Oonot) Յան Հենդրիկ (1900–1992), նիդեռլանդացի աստղագետ: Միջագգ. աստղագիտ. միության նախագահ (1958–1961): ՌԳԱ արտ. անդամ (1966): Աշխ-ները վերաբերում են աստղ. աստղագիտությանը և գիսավորների առաջացմանը: Ապացուցել է Գալակտիկայի պտույտը կենտրոնի նկատմամբ (1927), Գալակտիկայի դինամիկայի ուսումնասիրությունների հիմքն է դրել: Արտահայտել է Արեգակն. համակարգի հեռավոր ծայրամասում գիսավորների ամպի գոյության մասին վարկածը, որը, ըստ Օ-ի, դիտվող գիսավորների սկզբն. աղբյուրն է:

ՕՉՈԱ (Ochoa) Սևերո (1905–1993), բասկ կենսաքիմիկոս: ՌԳԱ արտ. անդամ (1966): 1941-ից՝ ԱՄՆ-ում: Մեծ ներդրում ունի գենետիկ. կոդի և նուկլեինաթթուների կենսասինթեզի մեխանիզմի վերծանման գործում: Անջատել և հետազոտել է պոլինուկլեոտիդֆոսֆորիլազ ֆերմենտը:

Նոբելյան մրց. (1959, Ա. *Քորնբերգի* հետ):

ՕՊԱԴՉԻ Ֆեոդոր Ֆեոդորովիչ (1907–1996), ռուս. օդաչու, գնդ.: ԽՍՀՄ վաստ. փորձարկող օդաչու (1959): ԽՄ հերոս (1957): Փորձարկել է փորձն. մխոցավոր և հրթիռ. ռմբակոծիչներ, այդ թվում՝ դրանց խոյահարման ունակությունը, ավիացիոն հանդերձվածությունը: Լենինյան մրց. (1957):

ՕՊԱԼ, հիդրօքսիդների դասի միներալ՝ $SiO_2 \cdot nH_2O$: Տարբերում են ազնիվ (թափանցիկ), հրային (դեղնաշագանակագույնից կարմիր), կաթնագույն, հասպիսային (կարմիրից շագանակագույն), մոմային (դեղին) Օ-ներ: Կարծր.՝ 5–6,5, խտ.՝ 1,9–2,3 $գ/սմ^3$: Ծագումը՝ նստվածք., ջրաջերմ.: Օ. ժամանակի ընթացքում ջրազրկվում է և փոխակերպվում խալցեդոնի կամ քվարցի: Կիրառում են որպես զարդաքար, ազնիվ Օ. թանկարժեք քար է:

ՕՊԱԼԵՑՅԵՆՅԻՄ. կրիտիկական (< *օպալ* և լատ.՝ escentia – վերջածանց՝ նշանակում է թույլ ազդեցություն), լույսի ցրման կտրուկ ուժեղացումը մաքուր նյութերում (գազերում և հեղուկներում) կրիտիկ. վիճակներում, նաև լուծույթներում, երբ դրանք հասնում են լուծելիության կրիտիկ. կետերին: Բացատրվում է նյութի սեղմելիության կտրուկ բարձրացմամբ, որի հետևանքով նրանում մեծանում է խտության ֆլուկտուացիաների թիվը, որոնցից ցրվում է լույսը (թափանցիկ նյութը դառնում է պղտոր):

ՕՊԱՐԻՆ Ալեքսանդր Իվանովիչ (1894–1980), ռուս կենսաքիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1946): Սոց. աշխ. հերոս (1969): ԽՍՀՄ ԳԱ կենսաքիմիայի ինստ-ի հիմնադիր-տնօրեն (1946–ից): Առաջ է քաշել Երկրի վրա կյանքի ծագման վարկած (1922): Աշխ-ներ ունի նաև բուս. հումքի վերամշակման կենսաքիմիայի, բույսերում ֆերմենտների ազդեցության վերաբերյալ: Լենինյան մրց. (1974):

ՕՊԵԿՈՒՇԻՆ Ալեքսանդր Միխայլովիչ (1838–1923), ռուս. քանդ.: Մասնակցել է «Ռուսաստանի հազարամյակը» (1862, Նովգորոդ) և Եկատերինա II-ի (1873, Ս. Պետերբուրգ) հուշարձանների ստեղծմանը (Մ. Օ. Միկեշինի նախագծով): Հեղինակ է նաև Ա. Ս. Պուշկինի (1880, Մոսկվա), Կ. Մ. Բերի (1886, Տարտու), Մ. Յ. Լերմոնտովի (1889, Պյատիգորսկ) և այլ հուշարձանների:

ՕՊԵՆՀԱՅՄԵՐ (Oppenheimer) Ռոբերտ (1904–1967), ամերիկացի ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են քվանտ. մեխանիկային, ատոմ. միջուկի և տիեզ. ճառագայթների ֆիզիկային, իզոտոպների բաժանմանը, նեյտրոն. աստղերին: Ղեկավարել է (1944–45) ամերիկ. ատոմ. ռումբի ստեղծման աշխ-ները: Ելույթ է ունեցել ջրածնային ռումբի ստեղծման դեմ, որի պատճառով 1953-ին մեղադրվել է «ոչ լոյալության» մեջ և հեռացվել բոլոր պաշտոններից ու գաղտնի տարվող աշխ-ներից:

ՕՊԵՐԱ. (իտալ.՝ opera – ստեղծագործություն), երաժշտաթատեր. ստեղծագործություն՝ խոսքի, բեմ. գործողության և երաժշտության համադրմամբ: Տարբերում են Օ-ի պատմահերոս., պատմառոմանտիկ., հերոսա-էպիկ., քնար., հեքիաթային-ֆանտաստիկ, կոմիկ (օպերա-կոմիկ, օպերա-բուֆֆ), օպերա-սերիա և այլ տեսակներ: Ձևավորվել է XVI–XVII դդ-ի սահմանագծին Իտալիայում: Առաջին Օ-ներն են՝ «Դափնե» (1597–98) և «Եվրիդիկե» (1600, երաժշտությունը՝ Յ. Պերիի, տեքստը՝ Օ. Ռինուչչինիի):

Առաջին հայկ. Օ-ի՝ «Արշակ Բ»-ի հեղինակը Տիգրան *Չուխաճյանն* է (1868, Կ. Պոլիս): Օ-ներ են գրել նաև Ա. Տիգրանյանը («Անուշ», 1908–12), Ա. Սպենդիարյանը («Ալմաստ», 1933), Կոմիտասը, Ս. Դեմուրյանը, Ե. Բաղդասարյանը, Ա. Տերտերյանը, Ա. Հարությունյանը, Ա. Մաթիլյանը, Գ. Հախինյանը, Ե. Երկանյանը, Ս. Ջրբաշյանը, Վ. Ադճեմյանը, Վ. Բաբայանը, Է. Սադոյանը, Ա. Ոսկանյանը և ուր.:

ՕՊԵՐԱՅԻՆ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԹԱՏՐՈՆ Հայաստանի ազգային (1994) **ակադեմիական** (1956) **Ալեքսանդր Սպենդիարյանի անվան** (1939), հիմնադրվել է 1932-ին Երևանում, բացվել Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայով (1933): 1940-ից գործում է Ա. Թամանյանի նախագծով կառուցած շենքում: Բալետի խումբը ձևավորվել է 1935-ին (Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճը»): Խաղացանկում՝ հայ, ռուս, արևմտաեվրոպացի կոմպոզիտորների օպերաներից և բալետներից: Թատրոնը ղեկավարել են Ա. Բուրջալյանը, Ա. Գուլակյանը, Վ. Ադճեմյանը, Վ. Վարդանյանը, Հ. Ղափլանյանը, Վ. Բագրատունին, Տ. Լևոնյանը, Գ. Գրիգորյանը, Կ. Գ. Օրբելյանը (2017-ից):

ՕՊԵՐԱՏԻՎ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ, գործութային հիշող սարք, համակարգչի արագագործ հիշող սարք. նախատեսված է այն տեղեկույթի ժամանակավոր պահպանման համար (օր.՝ արտաքին հիշողությունից վերցված տվյալներ), որն անհրաժեշտ է կենտր. պրոցեսորին՝ ծրագիրը կատարելու համար: Օ. հ. միկրոսխեմաների կամ մոդուլների հավաքածու է, որոնք պարունակում են սովորաբար համակարգ. մեկուսատախտակին կցվող միկրոսխեմաներ: Օ. հ. տվյալները պրոցեսորին հաղորդում է անմիջականորեն կամ քէշ-հիշողության (անգլ.՝ cachc memory) միջոցով: Օ. հ. իր մեջ ներառում է նաև այսպես կոչված հաստատուն հիշող սարք, որտեղ մշտապես պահվում են համակարգչի աշխ-ի համար անհրաժեշտ ծրագրեր և տվյալներ: Ժամանակակից համակարգիչներում Օ. հ-ի ծավալը 2 *Գբայթից* – 1 *Տբայթ* է:

ՕՊԵՐԱՏՈՐ, 1. մաթ. հասկացություն. նշանակում է համապատասխանություն որոշակի կառուցվածքով X և Y բազմությունների միջև, երբ X-ի յուրաքանչյուր x տարրին համապատասխանեցվում է Y-ի որևէ y տարր: Համարժեք իմաստ ունեն «արտապատկերում», «ձևափոխություն», «ֆունկցիա» եզրույթները: Սովորաբար «Օ.» եզրույթն օգտագործվում է, երբ X-ը և Y-ը ֆունկցիոնալ տարածության բազմություններ են: 2. **Հաշվողական տեխնիկայում,** ծրագրավորման տվյալ լեզվում Օ. կարգադրագիր է, որը համակարգչով տեղեկույթի մշակման ընթացքում նախատեսված է որոշակի ավարտված գործողության համար: 3. **Տեխնիկայում,** բարդ սարքավորման (օր.՝ ռադիոտեղորոշման կայանի, հանքահոր. տեղակայանքի) աշխ-ը կառավարման վահանից (պուլտ) կառավարող մասնագետ: 4. **Կինոյում,** կինոնկարահանումներ կատարող մասնագետ՝ կինոօպերատոր:

ՕՊԵՐԵՏ (իտալ.՝ operetta – փոքր օպերա), 1. մինչև XIX դ-ի կեսը՝ փոքր կոմիկ. օպերա: 2. Երաժշտաթատեր. ժանր. սովորաբար՝ կատակերգ. ներկայացում, որտեղ վոկալ և գործիք. երաժշտ. համարներն ընդմիջվում են երկխոսություններով: Ձևավորվել է Փարիզում XIX դ-ի կեսին: Օ-ի վարպետներից են Ի. Շտրաուս-որդին, Ժ. Օֆֆենբախը, Շ. Լեկոքը, Ֆ. Լեգարը, Ի. Կալմանը և ուր.:

Հայկ. առաջին Օ-ների («Արիֆի խարդախությունը», 1872, «Քեոսե Քեհյա», 1874, «Լեբլեբիջի Հոր-հոր աղա», 1876) հեղինակը Տիգրան Չուխաճյանն է: Օ-ներ են գրել նաև Ա. Այվազյանը, Վ. Տիգրանյանը, Ս. Ջրբաշյանը, Վ. Կոտոյանը, Գ. Հախինյանը, Է. Բաղդասարյանը, Է. Աբրահամյանը և ուր.:

ՕՊԻՈՒՄ, տես *Ափիոն*:

ՕՊՈԼՅԵՐ (Oppolzer) Թեոդոր (1841–1896), ավստրիացի աստղագետ: Հեղինակ է «Խավարումների կանոն» հիմնարար աշխ-յան (տպագրվել է հետմահու), որում բերված են տվյալներ արեգակն. և լուսն. խավարումների վերաբերյալ՝ մ. թ. ա. 1207-ից մինչև մ. թ. 2163-ը: Հետազոտել է մոլորակների և գիսավորների ուղեծրերը:

ՕՊՈՐՏՈՒՆԻՏՍ ՄՆԿԵՐ, տարբեր դասերի պայման. ախտածին սնկեր: Հայտնի է մոտ 300 տեսակ՝ հողում, օդում, բույսերի և սննդամթերքի վրա: Առավել կարևոր են մուկոր, վրձնասունկ, ասպերգիլ, կլադոսպորիում, կանդիդա ցեղերի ներկայացուցիչները: Առավել հաճախ երկրորդ. միկոզներն ի հայտ են գալիս վարակիչ, ուռուցք. հիվանդությունների, ՁԻԱՀ-ի ժամանակ, վիրահատ. միջամտությամբ, փոխպատվաստված օրգաններով հիվանդների մոտ:

ՕՊՏԻԿԱ. (հուն.՝ optike – գիտ-յուն տեսող. ընկալումների մասին), ֆիզիկայի բաժին. ուսումնասիրում է լույսի ճառագայթման, տարբեր միջավայրերում նրա տարածման և նյութի հետ լույսի փոխազդեցության շարժընթացները: Ուսումնասիրում է տեսանելի լույսին հարող էլեկտրամագնիս. ալիքների սպեկտրների ԱՄ (ներառյալ փափուկ ռենտգեն. ճառագայթները) և ԵԿ տիրույթները՝ ընդհուպ մինչև *մմ*-ային ռադիոալիքները: Էլեկտրամագնիս. ճառագայթման հետ կապված ֆիզիկայի այլ բաժիններից Օ. տարբերվում է ոչ այնքան ուսումնասիրվող ալիքների երկ-յամբ, որքան պատմականորեն մշակված և լայնո-

րեն կիրառվող յուրահատուկ մեթոդների ու հասկացությունների ամբողջությամբ: Օ–ի ներսում առանձնացնում են երկրչփ. Օ., ֆիզիոլոգ. Օ., ֆիզ. Օ, ոչ գծային Օ. ևն:

Շարժվող միջավայրերի Օ. դիտարկում է լույսի տարածումը շարժվող միջավայրերում: Առաջին փորձերը կապված են աստղերի լույսի աբեռացիայի հայտնաբերման հետ (XVIII դ.), հետագա հետազոտությունները հանգեցրել են շարժվող միջավայրով լույսի տարման (Ֆիզոյի փորձ), Դոպլերի էֆեկտների հայտնաբերմանը և հաստատել համաշիս. եթերի բացակայությունը (չգոյությունը): Այս երևույթների միանշանակ բացատրությունը տալիս է հարաբերականության հատուկ տեսությունը:

Բարակ շերտերի Օ. ուսումնասիրում է լույսի անցումը թույլ կլանող նյութի 1 կամ հաջորդաբար մի քանի շերտերով, որոնց հաստությունը համաչափելի է լույսի ալիքի երկ–յան հետ: Կարևոր նշանակություն ունի օպտիկ. դետալների մակերևույթների անդրադարձման ունակությունների փոքրացումը:

ՕՊՏԻԿԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ, որոշ նյութերի՝ իրենց միջով անցնող հարթ բևեռացված լույսի բևեռացման հարթությունը պտտելու հատկությունը: Օպտիկապես ակտիվ նյութերը 2 տեսակի են. 1–իների (շաքար, բևեկնայուղ, գինեթթու) Օ. ա. կախված չէ ագրեգատ. վիճակից և պայմանավորված է մոլ–ների անհամաչափ կառուցվածքով: 2–րդները (քվարց, կինոբար) օպտիկապես ակտիվ են միայն բյուրեղ. վիճակում, որը պայմանավորված է բյուրեղ. ցանցում գործող ուժերի անհամաչափությամբ: Արհեստ. (հարուցված) Օ. ա. առաջանում է մագնիս. տարրում (*Ֆարադեյի էֆեկտ*):

ՕՊՏԻԿԱԿԱՆ ԱՆԻԶՈՏՐՈՊՈՒԹՅՈՒՆ, միջավայրի օպտիկ. հատկությունների կախվածությունը նրանում տարածվող լույսի ուղղությունից և այդ լույսի բևեռացվածությունից: Օ. ա. արտահայտվում է լույսի ճառագայթի երկրեկումով և բևեռացման հարթության պտտումով: Հարուցված (արհեստ.) Օ. ա. առաջանում է իզոտրոպ միջավայրերում՝ արտաքին դաշտերի ազդեցությամբ, որոնք այդ միջավայրում առանձնացնում են որոշակի ուղղություններ. դրանցից են էլ. դաշտը (*Քերրի էֆեկտ*), մագնիս. դաշտը (*Կոտոն–Մուտոնի էֆեկտ, Ֆարադեյի էֆեկտ*), առաձգ. ուժերի դաշտը (*լուսաառաձգականություն*):

ՕՊՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՆՑՔ, 1. **բյուրեղի**, ուղղություն բյուրեղում, որի երկայնքով լույսի արագությունը կախված չէ նրա բևեռացման հարթության կողմնորոշումից: Բյուրեղի Օ. ա–ի երկայնքով տարածվող լույսը չի երկրեկվում: 2. **Օպտիկական համակարգի** Օ. ա, համակարգը կազմող մակերևույթների պտտման ընդհ. առանցքն է: Երբ այդպիսի առանցք գոյություն ունի, համակարգն անվանում են առանցքահամաչափելի:

ՕՊՏԻԿԱԿԱՆ ԽԱԲԿԱՆՔ, տեսող. ընկալման խիստ անհամապատասխանությունը դիտվող օբյեկտների իրական հատկություններին: Ըստ առաջացման բնույթի՝ Օ. խ–ները լինում են 2 տեսակ. 1. ծագում են աչքի՝ որպես օպտիկ. սարքի, 2. ողջ տեսողական ապարատի անկատարության պատճառով:


ՕՊՏԻԿԱԿԱՆ ԽՏՈՒԹՅՈՒՆ, նյութի անլուսանցիկության չափը. հավասար է նյութի շերտի վրա ընկնող Fo ճառագայթման հոսքի և այդ շերտի միջով անցած, կլանման և ցրման հետևանքով թուլացած F ճառագայթման հոսքի հարաբերության տասնորդական լոգարիթմին՝ D = lg(Fo/F):

ՕՊՏԻԿԱԿԱՆ ԿԱՊ, կապ՝ օպտիկ. տիրույթի (10^{13}–10^{15} *Հց*) էլեկտրամագնիս. տատանումների միջոցով, սովորաբար՝ *լազերի* կիրառմամբ: Օ. կ–ի համակարգերը կառուցվածքով նման են ռադիոկապի համակարգերին: Հեռանկարային են տիեզ. բաց և վերերկրյա փակ (լուսատարներով) գծերով Օ. կ–երը:


ՕՊՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, օպտիկ. դետալների (ոսպնյակներ, հայելիներ, պրիզմաներ ևն) համախումբ, որոնցով լուս. էներգիան տարածականորեն վերաբաշխվում է. դրանց գործողությունները հիմնված են լույսի բեկման կամ անդրադարձման երևույթների վրա: Օ. հ. օգտագործում են օպտիկ. պատկերման ձևավորման (օր.՝ լուսա– և պրոյեկցիոն սարքերի օբյեկտիվներ), տրված լուսավորվածության բաշխման ստեղծման (լուսավորման համակարգեր), լուս. փնջերի, սովորաբար՝ լազեր., փոխակերպման (օր.՝ օպտիկ. ձայնագրման սարքավորումներում), տարածության մեջ ճառագայթումը սպեկտր. բաղադրիչների բաժանման (սպեկտր. սարքերում) համար:

ՕՊՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ, համակարգիչ, որտեղ որպես տեղեկույթի կրիչ օգտագործում են օպտիկ. ճառագայթումը: Օ. հ–ի հիմքում օպտիկ. պրոցեսորն է, որում բոլոր գործողությունները կատարվում են ոչ թե էլեկտրոնների, այլ լուս. հոսքերի միջոցով: Ստեղծված է օպտիկ. պրոցեսոր, որը *վ*–ում կատարում է մինչև 10^{13} գործողություն:

ՕՊՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ, օբյեկտի պատկեր, որն ստացվում է նրա ճառագայթած կամ անդրադարձրած ճառագայթների՝ օպտիկ. համակարգի միջով անցնելու արդյունքում: Օ. պ. վերարտադրում է օբյեկտի ուրվագիծն ու մանրամասները՝ որոշակի աղավաղումով (օպտիկ. համակարգի խոտորումներ): Տարբերում են իրական (նկ. ա) և կեղծ (նկ. բ) Օ. պ–ներ:



ա. A օբյեկտի շրջված իրական պատկեր՝ A′, որն առաջացել է ոսպնյակով, F–ը ոսպնյակի կիզակետն է



բ. A օբյեկտի կեղծ պատկերը՝ A′

ՕՊՏԻԿԱԿԱՆ ՈՒԺ, ոսպնյակի (ոսպնյակների համակարգի) բեկման ունակությունը բնորոշող մեծություն. չափվում է *դիօպտրիներով*: Օ. ու. կիզակետ. հեռ–յանը հակադարձ մեծությունն է:

ՕՊՏԻԿԱԿԱՆ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, ակտիվ միջավայրում ուժեղացված և այդ միջավայր մտնող ճառագայթների հոսքերի էներգիաների հարաբերությունը:

ՕՐԼԵԱՆ (Orléans), ք. Ֆրանսիայում՝ Լուար գետի ափին, Լուար դեպարտամենտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 131,7 հզ. (2010): Տրանսպորտ. հանգույց է: Գործում է ժանյա դ՝ Արկի թանգարանը: Կան գոթ., Վերածննդի, բարոկկո և դաս. ոճի կառույցներ:

ՕՐԼԻՆՍԿԱՅԱ Նինա Գարեգինի, Բասմաչյան Քնարիկ (1906–1973), դերասանուհի: Ադրբ. ԽՍՀ ժող. արտիստ (1956): 1933–ից՝ Կիրովաբադի Ջ. Ջաբաւլիի անվ. ադրբ. դրամատիկ. թատրոնի առաջատար դերասանուհի (Սևիլ՝ Ջ. Ջաբաւլիի «Սևիլ», 1929, Սուսան՝ Շիրվանզադեի «Նամուս», 1928, Լիդա՝ Ա. Ե. Կոռնեյչուկի «Պլատոն Կրեչետ», 1936, Դեզդեմոնա՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», 1931):

ՕՐԼՈՎ Յուրի Ալեքսանդրովիչ (1893–1966), ռուս կենդանաբան, հնէաբան: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1960): Աշխ–ները վերաբերում են ժամանակակից անողնաշարների նյարդահյուսվածաբանությանը, համեմատ. ձևաբանությանը, հնանյարդաբանությանը և բրածո կաթնասունների էվոլյուցիային: «Հնէաբանության հիմունքները» (հ. 1–15) տեղեկատուի գլխ. խմբ.: Լենինյան մրց. (1967, հետմահու):

ՕՐԼՈՎԱ Լյուբով Պետրովնա (1902–1975), ռուս դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1950): 1926–33–ին՝ Մոսկվայի Վ. Ի. Նեմիրովիչ–Դանչենկոյի անվ. երաժշտ., 1955–ից՝ Մոսսովետի անվ. թատրոնների դերասանուհի (Միսիս Սևիջ՝ Ջ. Պատրիկի «Տարօրինակ միսիս Սևիջը», ևն): Նկարահանվել է ամուսնու՝ ռեժ. Գ. Վ. Ալեքսանդրովի «Ուրախ տղաներ», «Կրկես», «Վոլգա–Վոլգա», «Գարուն» և այլ երաժշտ. կինոկատակերգություններում: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1950):

ՕՐՆԻԹՈԶՆԵՐ, պսիտակոզներ, թռչնախտեր, մարդու և թռչունների վարակիչ հիվանդություններ: Թռչունների Օ–ի ախտանշանները՝ հյուծում, լուծ, լուծանքներ, մարդկանցը՝ մարմնի ջերմաստիճանի բարձրացում, գլխացավեր, մկանացավեր, թոքաբորբ: Մարդը վարակվում է հիվանդ թռչունի ձվերն օգտագործելուց:

ՕՐՆԻԹՈԼՈԳԻԱ, տես *Թռչնաբանություն*:

ՕՍԱԿԱ, ք–նվ–նգատ Ճապոնիայի Հոնսյու կղզում, համանուն պրեֆեկտուրայի վարչ. կենտրոնը Ներքին Ճապոն. ծովի ափին: Բն.՝ 2,66 մլն (2010, Կոբե և որոշ այլ ք–ների հետ կազմում է ավելի քան 11 մլն բնակչությամբ քաղաք. ագլոմերացիա): Ունի 2 օդանավակայան, մետրոպոլիտեն: Խոշոր առևտրաֆին. կենտրոն է:

ՕՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, օս ժող–ի գրկ.: 1798–ին հրատարակվել է գր. օս–ով առաջին գիրքը («Համառոտ կատեխիզիս»): XIX դ–ի 2–րդ կեսին ստեղծագործել է օս. գրկ–յան հիմնադիր Կ. *Խեթագուրովը*, XIX դ–ի վերջին՝ Ա. Կուբալովը (1871–1944), Բ. Գուրջիբետին (1868–1905): XX դ–ում հիմնադրվել են թերթեր, երևան է եկել ազգ. մամուլը, դրամատուրգ. և արձակ գործեր են ստեղծել Ե. Բրիտաևը (1881–1923), Ս. Գադիևը (1856–1915), Ա. Կոցոևը (1872–1944), Ց. Գադիևը (1883–1931), Գ. Բարակովը (1890–1937), Նիգերը (Ի. Զանաև, 1896–1947), Կ. Ֆառնիոնը (1907–1937), Բ. Բոցիևը (1901–1944), Դ. Մամսուրովը (1909–1966), Խ. Պլիևը (1908–1966) և ուր.: ՀՄՊ–ի (1941–45) ժամանակ Օ. գ–յան մեջ գերիշխել է պատերազմի թեման: Հետպատերազմյան տարիներին ստեղծվել են վիպական գոր–

ծեր. ստեղծագործել են Ե. Ուրույմագովան (1905–1955), Ֆ. Գագլոևը (1913–1983), Ա. Ագուզարովը (1922–1994) և ուր.: XX դ-ի վերջին և XXI դ-ի սկզբին Օ. գ. հարստացել է այժմեականությունը պատկերող Գ. Խուգանի, Ռ. Խուբեցովի, Ի. Կոզանի, Ա. Կոճատիի, Վ. Մալիևի և ուր. ստեղծագործություններով:

ՕՍԲՈՌՆ (Osborn) Հենրի Ֆերֆիլդ (1857–1935), ամերիկացի կենսաբան: ԽՍՀՄ ԳԱ (1925), ՌԳԱ (1923-ից) արտ. թղթ. անդամ: Աշխ-ները վերաբերում են ողնաշարավորների հնէաբանությանը և էվոլյուցիոն ուսմունքի պատմությանը: Առաջարկել է (1931) նեոլամարկիզմին մոտ էվոլյուցիայի հայեցակարգ (այսպես կոչված արիստոգենեզ):

ՕՍԲՈՒՌՆ (Osborne) Ջոն (1929–1994), անգլիացի դրամատուրգ: Հեղինակ է «Ետ նայիր զայրացած» (1957, հայ.՝ 1983), պատմ. թեմաներով «Լյութեր» (1961), Մեծ Բրիտանիայի հաս. քաղ. համակարգի մասին «Սուեզից արևմուտք» (1969), «Խորթացման զգացում» (1972) քննադատ. պիեսների, «Բարձրակարգ մարդը» (1981) ինքնակենսագր. երկի:

ՕՍԵՐ (ինքնանվանումը՝ իրոն, դիգորոն), ժողդ ՌԴ-ում (514,9 հզ., որից 445,3 հզ-ը՝ Հս. Օսիայում, 2002) և Հվ. Օսիայում (45 հզ., 2008): Լեզուն՝ օսերեն: Հավատացյալները հիմնականում ուղղափառ քրիստոնյա են, կան նաև սուննի մահմեդականներ:

ՕՍԵՐԵՆ, *օսերի* լեզուն: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի հնդիրան. ճյուղին: Գրավոր հնագույն հուշարձանը (հուն.տառ) ավանդվել է X դ-ից: Գրի հիմքում՝ լատ. (1923–38), Հս. Օսիայում՝ ռուս. (1938-ից), Հվ. Օսիայում վրաց. (1954-ից՝ ռուս.) այբուբենն է:

ՕՍԵՑԿԻ (Ossietzky) Կառլ Ֆոն (1889–1938), գերմանացի հրապարակախոս: Հեղինակ է սուր բանավիճային, երգիծ-քաղ. հրապարակախոս., Գերմանիայի ռազմամոլությունը քննադատող հոդվածների: Մահացել է համակենտրոնացման ճամբարում: Խաղաղության Նոբելյան մրց. (1935):

ՕՍԹՀՈՖ (Osthoff) Հերման (1847–1909), գերմանացի լեզվաբան, հնդեվրոպաբան: Հեղինակ է «Ձևաբանական հետազոտություններ հնդեվրոպական լեզուների բնագավառում» (Կ. *Բրուգմանի* հետ, հ. 1–6, 1878–1910) լեզվաբ. ժող-ների շարքի, և այլ աշխ-ների: «Հայերենի հնչյունաբանության և բառաքննության մասին» (1901) աշխ-յան մեջ ներկայացրել է հայ. բառերի ու մասնիկների ստուգաբանությունը, ճշտել հնչյուն. օրենքները:

ՕՍԹՐՈՄ (Ostrom) Էլինոր (1933–2012), ամերիկացի տնտեսագետ: Աշխ-ները վերաբերում են հաս-յան կառավարման, այդ թվում՝ կոլեկտիվ գործողությունների ինստ-ների էվոլյուցիայի հարցերին:

Նոբելյան մրց. (2009): Առաջին կին տնտեսագետ մրցանակակիրը:

ՕՍԻԿՈ Վյաչեսլավ Վասիլևիչ (ծ. 1932), ռուս. ֆիզքիմիկոս: ՌԳԱ ակադ. (1991): Աշխ-ները վերաբերում են քվանտ. էլեկտրոնիկայի, միկրոէլեկտրոնիկայի, օպտիկայի համար նյութերի ստացման տեխնոլոգիային և ֆիզիկային: Ղեկավարել է ֆիանիտների ստեղծման աշխ-ները: Լենինյան մրց. (1980):

ՕՍԻՊՅԱՆ Լիա Լևոնի (ծ. 1930), բուսաբան-սնկաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1970), պրոֆ. (1972): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1986-ից): ՀՀ գիտ. վաստ. գործիչ (1980): Տատյանա *Հովսեփյանի* քույրը: ԵՊՀ կենսբ. ֆակ-ի դեկան (1986–90, 1999–2002): Աշխ-ները վերաբերում են տես. և կիրառ. սնկաբանության, սնկերի տեսակ. կազմի, կարգաբանության, էկոլոգիայի, ֆիզիոլոգ. ակտիվության հարցերին: ՀՀ-ում սնկաբանության փորձարար. ուղղության հիմնադիրն է, «Ստորակարգ բույսերի հիմնական խմբերի լատիներեն-ռուսերեն-հայերեն դասակարգումը» (1987) գրքի կազմողներից: Նյու Յորքի ԳԱ անդամ (1995-ից):

ՕՍԻՊՅԱՆ Յուրի Անդրեյի (1931–2008), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1968), պրոֆ. (1970): ՌԳԱ ակադ. (1981, թղթ. անդամ՝ 1972-ից): Տարատեղման (դիսլոկացիոն) ֆիզիկայի հիմնադիրը: Սոց. աշխ. հերոս (1986): 1973-ից՝ ՌԳԱ պինդ մարմնի ֆիզիկայի ինստ-ի տնօրեն, 1988–2001-ին՝ ՌԳԱ փոխնախագահ: Հայտնաբերել է ֆոտոառաձգականության երևույթը կիսահաղորդիչներում, էլեկտրապլաստիկ էֆեկտը՝ բյուրեղի պլաստիկության փոփոխությունը էլ. դաշտի ազդեցությամբ: ԽՍՀՄ նախագահ. խորհրդի անդամ (1989–91):

Կարպինսկու անվ. մրց. (1991, ԳԴՀ): Լենինի (1981, 1986), ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (1971, 1975), ՌԴ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի (1999), Սիմոն Բոլիվարի (1990, Կոլումբիա), «Պատվո լեգեոն» (1990, Ֆրանսիա) շքանշաններ, ՌԳԱ Մ. Վ. Լոմոնոսովի անվ. Մեծ (2005), Պ. Ն. Լեբեդևի անվ. ոսկե (1984) մեդալներ:

ՕՍԻՊՅԱՆ Սուրեն Արտաշեսի (ծ. 1931), իրավաբան: Իրավաբ. գիտ. դ-ր (2005), պրոֆ. (2006): ՀԽՍՀ վաստ. իրավաբան (1982): 1971–88-ին՝ ՀԽՍՀ գլխ. դատախազ: Աշխ-ները վերաբերում են պետության և իրավունքի տեսության հարցերին: ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (1972), Ժողդ-ների բարեկամության (1981) շքանշաններ:

ՕՍԻՊՈՎ Յուրի Սերգեևիչ (ծ. 1936), ռուս մաթեմատիկոս և մեխանիկոս: ՌԳԱ ակադ. (1987, նախագահ՝ 1991–2013-ին), ՌԳԱ մաթ-ի ինստ-ի տնօրեն (1993–2004), «Ռուսական մեծ հանրագիտարանի» գիտախորհրդ. խորհրդի նախագահ (2002-ից), մի շարք հանդեսների գլխ. խմբ.: ՌԴ ԱԽ անդամ (1997-ից), ՌԴ գիտ-յան և տեխնիկայի գծով պետ. մրցանակների պետ. կոմիտեի նախագահ (1992–2004): Աշխ-ները վերաբերում են կառավարման տեսության, դիֆերենցիալ հավասարումների և դրանց կիրառման հարցերին: Լենինյան (1976) և ՌԴ Պետ. (1993) մրց-ներ:

ՕՍԻՊՈՎ (Հովսեփյան) Օսիպ (Հովսեփ) Սահակի (1912–2011), Փառքի 3 աստիճանների շքանշաններ (1943, 1944, 1946): Արժանացել է Կերչի, Լեհաստանի ազատագրման մարտերում և Օդերի ափին հենակետ գրավելիս ցուցաբերած խիզախության համար:

ՕՍԻՍ (Osis) Յանիս (1895–1973), լատիշ դերասան: ԽՍՀՄ ժող. արտիստ (1956): 1919-ից խաղացել է Ռիգայի Ա. Ուպիտի անվ. լատվ. թատրոնում (Ֆամուսով՝ Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս», Քաղաքագուլուխ՝ Ն. Վ. Գոգոլի «Ռևիզոր», ևն): Նկարահանվել է կինոյում: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950, 1951):

ՕՍԻՐԻՍ, մեռնող և հառնող բնության աստվածը եգիպտ. դից-յան մեջ: Իսիդայի եղբայրն ու ամուսինը, Հորուսի հայրը, մեռյալների հովանավորն ու դատավորը: Հայկ. դիցարանում Օ-ին համապատասխանում է *Արան*:

ՕՍԼԱ, $(C_6H_{10}O_5)_n$, բույսերում կուտակվող հիմն. պաշար. ածխաջուր, բաղկացած է 2 բազմաշաքարներից՝ չճյուղավորված շղթայով ամիլոզից և ճյուղավորված ամիլոպեկտինից: Առաջանում է քլորոպլաստներում և ամիլոպլաստներում, կուտակվում է բջիջներում՝ հատիկների ձևով: Օ-ի ճեղքման ժամանակ առաջացած խաղողաշաքարն էներգիայի աղբյուր է տարբեր կենսընթացների համար: Օ. սննդանյութերի (ցորենի այլուրում՝ 75–80 %, կարտոֆիլում՝ 25 %) և բազմաթիվ կերերի կարևոր բաղադրիչներից է: Կիրառվում է սննդի արդ-յան մեջ: Ստացվում է կարտոֆիլից, եգիպտացորենից, բրնձից, ցորենից:

ՕՍԼԵՐ (Osler) Ուիլյամ (1849–1919), կանադացի թերապևտ և պատմաբան: 1884-ից՝ ԱՄՆ-ում, 1905-ից՝ Անգլիայում: Նկարագրել է արյան թրոմբոցիտները (1873), ֆիլյարիատոզի հարուցիչները (1976), ժառանգ. տելեանգիէկտազը (1901, Օ-ի հիվանդություն), վարակ. էնդոկարդիտի պատանչանը (Օ-ի հանգույցներ) ևն:

ՕՍԼՕ (Oslo), Նորվեգիայի մայրաքաղաքը (1814-ից), նվինգստ Օսլո ֆիորդի ափին: Ունի օդանավակայան, մետրոպոլիտեն: Օ-ում կենտրոնացած է երկրի արդ-յան շուրջ 25 %-ը: Կան մեքենաշին. (նավաշինություն, ռադիոէլեկտրոն. և էլեկտրատեխ.), քիմ., սննդի, տպագր. արդ-յան և այլ ձեռն-ներ: Գործում են բազմաթիվ բուհեր, թատրոններ և թանգարաններ («Ֆրամ», «Կոն Տիկի», Ժող. բացօթյա ևն): Հիմնադրվել է 1048-ին: Օ-ում անցկացվել են VI ձմեռ. օլիմպ. խաղերը (1952):

ՕՍԼՈՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Նորվեգիայի խոշորագույն համալսարաններից: Հիմնադրվել է 1811-ին: Մինչև 1939-ը՝ Ֆրեդերիկի թագավոր. համալսարան: 2015-ին ուներ շուրջ 32 հզ. ուսանող:

ՕՍԿԱՆՅԱՆ Վարդան Մինասի (ծ. 1955), պետ-քաղ. գործիչ: ՀՀ ԱԳ նախարար՝ 1998–2008-ին: «Հայկական միջազգային ամսագիր» (անգլ.) պարբ-ի հիմնադիր-խմբ. (1990–92), «Սիվիլիթաս» հիմնադրամի հիմնադիր նախագահ (2008–12):

ՕՍԿԱՆՅԱՆ Պյոտր Ստեփանի (1923–1988), Փառքի երեք աստիճանների շքանշանների ասպետ (1944, 1944, 1945), գվարդիայի եֆրեյտոր: Աչքի է ընկել Արմ. Բուգի գետանցման ժամանակ և Լեհաստանի ազատագրման մարտերում:

«ՕՍԿԱՐ», Կինեմատոգրաֆ. արվ-ների և գիտ-յան ամերիկ. կինոակադ-ի ամենամյա մրց.: Շնորհվում է 1929-ից՝ 24 հիմն. անվանակարգերում («Լավագույն դերասան», «Լավագույն ֆիլմ», «Լավագույն օտարալեզու ֆիլմ», «Լավագույն ռեժիսոր» ևն): Տրվում է նաև հատուկ «Օ.»՝ կինոարվ-ում ունեցած ներդրման համար:

ՕՍԿԱՐ I (Oskar, 1799–1859), Շվեդիայի և Նորվեգիայի թագավոր՝ 1844–59-ին՝ Բերնադոտների հարստությունից: Կառլ XIV-ի որդին, *Օսկար II*-ի հայրը: Իրականացրել է մի շարք տնտ. բարեփոխումներ: Սկանդինավյան երկրների միավորման կողմնակից:

ՕՍԿԱՐ II (1829–1907), Շվեդիայի (1872–1907) և Նորվեգիայի (1872–1905) թագավոր՝ Բերնադոտների հարստությունից: *Օսկար I*-ի որդին:

ՕՍՄԱՆ I Ղազի (մոտ 1258–1324/26), թուրք սուլթան՝ 1299-ից, թուրք. սուլթանների

հարստության հիմնադիրը: 1281-ին հորից ժառանգել է բեյություն՝ *Իկոնիայի սուլթանության* հս-արմ-ում, որն աստիճանաբար ընդարձակել է բյուզ. տարածքների հաշվին: Իկոնիայի սուլթանության անկումից հետո այն վերածել է անկախ իշխանության, որը նրա անունով կոչվել է **օսմանյան** (այստեղից էլ՝ Օսմ. կայսրության օսմաններ, օսմանցիներ անվանումը):

ՕՍՄԱՆՅԱՆ ԴՐԱՄԱՏԻԿ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ, հայ դերասաններից կազմված թրքախոս թատրոն Կ. Պոլսում: Հիմնադրվել է 1885-ին, հիմնադիր-ղեկ.՝ Մարտիրոս Մնակյան: Թատերախմբում՝ Մարի Նվարդ, Դավիթ Թրյանց, Մանուկ Սիսակ, Զապել Հեքիմյան, Պայծառ Ֆասուլաճյան և ուր.: Բեմադրվել են հիմնականում սալոն. պիեսներ, հոգեբ. և սոցիալ. դրամաներ, մելոդրամաներ (Ա. Դյումա-որդու «Կամելիազարդ տիկինը», Օ. Ֆելյեյի «Դալիլան», Ա. Չոպանյանի «Մութ խավեր», Պ. Դուբյանի «Թատրոն կամ թշվառներ», Ֆ. Պիայի «Փարիզի հնահավաքը» ևն), 1908-ից՝ ժամանակակից թուրք. հեղինակների գործերից: Թատերախմբի գործունեությունն ընդհատվել է 1914-ին:

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ, **Օսմանյան կայսրություն**, սուլթան. Թուրքիայի պաշտոն. անվանումը: Հիմնադրվել է XV–XVI դդ-ում Ասիայում, Եվրոպայում, Աֆրիկայում թուրք. նվաճումների հետևանքով: Առավել ծավալման շրջանում (XVII դ-ի 3-րդ քառորդ) ներառել է Բալկանյան թերակղզին, Հս. Աֆրիկայի և Միջագետքի զգալի տարածքներ: XVII դ-ի վերջից աստիճանաբար կորցրել է նվաճած տարածքների առանձին մասեր, 1918-ին՝ ԱՀՊ-ում պարտվելուց հետո, փլուզվել է:

ՕՍՄԻՈՒՄ (Osmium), Os, տարրերի պարբեր. համակարգի VIII խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 76, ա. զ.՝ 190,2, պլատինի խմբի մետաղ է: Անվանումը՝ հուն. osme – հոտ, ըստ սուր հոտով օքսիդի՝ OsO_4: Խտ.՝ 22,61 $գ/սմ^3$, $t_{հալ.}$՝ մոտ 3027°C: Որոշ ռեակցիաների կատալիզորդ է, գերպինդ և մաշակայուն իրիդիումի հետ համաձուլվածքների բաղադրիչ:

ՕՍՄՈԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ, ֆիզքիմ. և ֆիզիոլոգ. կենսընթացներ, որոնք ապահովում են օրգանիզմի ներքին միջավայրի (արյուն, ավիշ, միջբջջ. հեղուկ) օսմոտիկ ճնշման հարաբեր. կայունությունը: Օ-ման արդյունքում իրականանում է օրգանիզմից ջրի կամ աղերի (գլխավորապես՝նատրիումի քլորիդի) հեռացումն օրգանիզմից կամ նրանց կասեցումն ու վերաբաշխումն օրգանիզմում:

ՕՍՄՈՍ (հուն.՝ osmos – հրում, ճնշում), լուծիչի միակողմանի ինքնաբերաբար անցումը միջնորմով կիսաթափանցիկ թաղանթով, որը լուծույթը բաժանում է մաքուր լուծիչից կամ ցածր կոնցենտրացիայի լուծույթից: Բնութագրվում է **օսմոտիկ ճնշմամբ**, որը հավասար է այն ավելցուկ. արտաքին ճնշմանը, որն անհրաժեշտ է կիրառել լուծույթի կողմից, որպեսզի Օ. դադարեցվի: Ունի կարևոր նշանակություն ֆիզիոլոգ. կենսընթացներում (տես *Օսմոկարգավորում*): Օգտագործում են պոլիմերների, կենսբ. կառուցվածքների ուսումնասիրման համար:

ՕՍՎԱԼԴ (Oswald) Ֆելիքս (1866–1958), անգլիացի երկրաբան, դիվանագետ: Մասնակցել է Հ. Ֆ. *Լինչի* 1898-ի հայկ. գիտարշավին, ուսումնասիրել Հայկ. լ-աշխարհի երկրբ. կառուցվածքը՝ Տրապիզոն–Էրզրում–Վան կտրվածքով, հրատարակել լ-աշխարհի երկրբ. սխեմատիկ քարտեզը (1907): Հայկ. լ-աշխարհի վերաբերյալ հետազոտությունների արդյունքներն 1-ին անգամ շարադրել է «Քննախոսություն Հայաստանի երկրաբանության» (1906) երկում: 1910-ին հրատարակել է «Հայկական լեռնաշխարհի տեկտոնական զարգացման պատմության շուրջը» (գերմ.) աշխ-ը: «Ռեգիոնալ երկրաբանության ձեռնարկ» մատենաշարով 1912-ին անգլ. լույս է տեսել նրա «Հայաստան» մենագրությունը:

ՕՍՎԵՆՑԻՄ, ք. Լեհաստանի հվ-ում՝ Սոլա գետի ափին: Բն.՝ 40 հզ. (2010): 1940–45-ին Օ-ի մոտ եղել է գերմ. համակենտրոնացման ճամբար, որտեղ սպանվել է ավելի քան 4 մլն մարդ: 1945-ի հունվ. 27-ին ազատագրել է խորհրդ. բանակը: Այդ օրը հռչակվել է Հոլոքոստի զոհերի հիշատակի միջազգ. օր: Նախկին համակենտրոնացման ճամբարի տեղում ստեղծվել է թանգարան: Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՕՍՏԳՈԹԵՐ (լատ.՝ Ostrogothi), հին ժողղ, գոթերի արլ. ճյուղը: 474-ին Օ-ի հիմն. խմբերը շարժվել են դեպի Բալկաններ, միավորվել են Թեոդորիխ Մեծի առաջնորդությամբ և 488/489-ին անցել են Իտալիա: Տապալել են Օդոակրին և 493-ին հիմնադրել իրենց թագավորությունը: 536–552/555-ի պատերազմի ժամանակ ջախջախվել են բյուզանդացի հայազգի զորավար *Նարսեսի* գլխավորած զորքից: Մնացած Օ. գաղթել են կամ մասնակցել իտալացիների էթնոգենեզին:

ՕՍՏԵՈ... (հուն.՝ osteon – ոսկր), բարդ բառերի մաս. ցույց է տալիս ոսկրին, ոսկր. հյուսվածքին վերաբերելը (օր.՝ օստեոխոնդրոզ):

ՕՍՏԵՈԲԼԱՍՏՆԵՐ (< *օստեո...* և հուն.՝ blastos – սաղմ, ծիլ), մարդու և ողնաշարավոր կենդանիների ոսկր. հյուսվածք արտադրող մեզենքիմ. ծագման բջիջներ: Գոյանում են միայն ձևավորվող ոսկրում՝ հյուսվածքի քայքայման և վերականգնման հատվածներում, նաև նրա պարբեր. վերակառուցումների ժամանակ: Արտադրում են սոսնձող նյութ՝ օսեին, և կալցիումի աղեր:

ՕՍՏԵՈԴԻՍՏՐՈՖԻԱ (<*օստեո...* և dys – խախտում, trophc – սնացում), ոսկր. հյուսվածքի նյութափոխանակության խանգարում՝ ոսկր. հյուսվածքի փոխարինումը ֆիբրոզայինով, աճառայինով: Առաջացնում է ոսկրերի ձևախախտում, ախտաբան. կոտրվածքներ:

ՕՍՏԵՈԽՈՆԴՐՈԶ (< *օստեո...* և chondros – աճառ), ոսկր. և աճառ. հյուսվածքների (առավելապես՝ միջողն. սկավառակների) սնուցախանգարում: Դրսևորվում է ցավերով, ախտահարված հոդերում շարժումների սահմանափակմամբ:

ՕՍՏԵՈՍԱՐԿՈՄԱ, ոսկրի չարորակ ուռուցք: Հաճախ զարգանում է երեխաների և դեռահասների երկար ոսկրի (սովորաբար՝ ծնկահոդի) շրջանում: Բուժումը՝ վիրաբուժական՝ քիմիաբուժության հետ զուգորդված:

ՕՍՏԻՆ (Austin), ք. ԱՄՆ հվ-ում, Տեխաս նահանգ-ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 948 հզ. (ագլոմերացիայում՝ 1,8 մլն, 2016): Բարձրտեխնոլոգ. արտադր-յան կենտրոն է, ունի համալսարան (Տեխասի):

ՕՍՏՎԱԼԴ (Ostwald) Վիլհելմ Ֆրիդրիխ (1853–1932), գերմանացի ֆիզքիմիկոս, ֆիզքիմիայի հիմնադիրներից: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1896): Աշխ-ները վերաբերում են էլեկտրոլիտների լուծույթների, քիմ. կինետիկայի և կատալիզի տեսությանը: Կազմակերպել է (1889) «Ճշգրիտ գիտությունների դասականների» շարքի հրատարակումը:

Նոբելյան մրց. (1909):

ՕՍՏՐՈԳՐԱԴՍԿԻ Միխայիլ Վասիլևիչ (1801–1861/62), ռուս. մաթեմատիկոս և մեխանիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1830): Զևակերպել է ընդհ. վարիացիոն սկզբունքը ոչ պահպանող. համակարգերի համար: Հայտնի է (1828–31) Օ-ու բանաձևը:

ՕՍՏՐՈՎԻՏՅԱՆՈՎ, Կոնստանտին Վասիլևիչ (1892–1969), ռուս. տնտեսագետ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1953, փոխնախագահ՝ 1953–62): Աշխ-ները վերաբերում են քաղտնտ-յան խնդիրներին:

ՕՍՏՐՈՎՍԿԻ Ալեքսանդր Նիկոլաևիչ (1823–1886), ռուս դրամատուրգ: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1863): Հեղինակ է «Եկամտաբեր պաշտոն» (1857), «Աղքատությունն արատ չէ» (1854), «Ամպրոպ» (1859, հայ.՝ 1973), «Անտառ» (1871, հայ.՝ 1973), «Գայլեր և ոչխարներ» (1875, հայ.՝ 1973) կատակերգությունների, «Վերջին զոհը» (1877), «Անօժիտը» (1878), «Տաղանդներ և երկրպագուներ» (1881), «Գեղեցիկ տղամարդը» (1882), «Անմեղ մեղավորներ» (1884) և սոցիալ-հոգեբ. թեմաներով այլ դրամաների, «Ձյուռանուշիկ» (1873) չափածո և այլ պիեսների: Օ-ու մոտ 2 տասնյակ պիեսներ թարգմանվել և բեմականացվել են հայ բեմում: Հայ. հրատարակվել են «Պիեսներ» (1947), «Ընտիր երկեր» (1948) ժող-ները:

ՕՍՏՐՈՎՍԿԻ Արկադի (Ավրաամ) Իլյիչ (1914–1967), ռուս. կոմպոզիտոր: Մ. Ա. *Օստրովսկու* հայրը: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1965): Հեղինակ է «Կոմերիտականներ՝ անհանգիստ սրտեր» (1948), «Թող լինի միշտ արևը» (1962), «Երկրի ձայնը», «Քաած են հոգնած խաղալիքները» և այլ երգերի:

ՕՍՏՐՈՎՍԿԻ Միխայիլ Արկադևիչ (ծ. 1935), ռուս. ֆիզիոլոգ: ՌԳԱ ակադ. (1994): Ա. Ի. *Օստրովսկու* որդին: «Տեսողության մոլեկուլային ֆիզիոլոգիայի» գիտ. ուղղության հիմնադիրներից: Ուսումնասիրել է տեսողության առաջն. շարժընթացների մոլ. մեխանիզմները: Բնական գոյնով արհեստ. ոսպնյակի ստեղծողներից է:

ՕՍՐՈՅԵՆԵ, **Օսրոենե, Եդեսիայի թագավորություն**, քաղ., պետ. կազմավորում Հս. Միջագետքում՝ *Եդեսիա* կենտրոնով՝ մ. թ. ա. 132–մ. թ. 216-ին: Հիմն. բնակիչներն ասորիներ ու հայեր էին: *Տիգրան Բ*-ի և *Սանատրուկի* ժամանակ Օ. մտել է Հայաստանի կազմի մեջ: Արգար VII-ից (109–116) սկսած՝ Օ-ում գահակալել են հայազգի թագավորներ: 207-ին՝ Արգար IX-ի (179–214) օրոք, Օ-ում քրիստոնեությունը ճանաչվել է պաշտոն. կրոն: 215-ին Հռոմի կայսր Մ. Կարակալլան կործանել է Օ-ի թագավորությունը և այն դարձրել հռոմ. նահանգ:

ՕՍՑԻԼՅԱՏՈՐ (լատ.՝ oscillo – ճոճվել, տատանվել), տատանվող համակարգ: Օ. անվանում են ներդաշնակ, եթե նրա պոտենցիալ էներգիան համեմատական է հավասարակշռության դիրքից շեղման քառակուսուն, որը տեղի ունի փոքր տատանումների դեպքում: Քվանտ. Օ-ի էներգիան ընդունում է ընդհատուն արժեքներ:

ՕՍՑԻԼՈԳՐԱՖ (< լատ. oscillo – ճոճվել և ...*գրաֆ*), արագ փոփոխվող 2 և ավելի

մեծությունների (էլ. կամ էլ–ի փոխակերպված) միջև կախվածության դիտարկման սարք: Առավել տարածված են **էլեկտրոնաճառագայթային** Օ–ները, որոնց մեջ հետազոտվող մեծությունների փոփոխությունները, համեմատական ազդանշանները մատուցվում են օսցիլոգրաֆ. խողովակի շեղվող թիթեղների վրա. խողովակի էկրանի վրա դիտում կամ լուսանկարում են կախվածության գրաֆիկ. պատկերը:

ՕՎԱԼ (լատ.՝ ovum–ձու), **ձվարդ**, փակ ուռուցիկ հարթ կոր՝ առանց անկյուն. կետերի, օր.՝ *էլիպսը*:

ՕՎԱՆԵՍՈՎ Գուրգեն Պավելի (1909–1993), երկրաբան: Երկրբ–հնհքբ. գիտ. դ–ր (1960), պրոֆ. (1961): ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1956): 1965–81–ին՝ ՌԽՖՍՀ նավթի ու գազի արդ–յան գլխ. վարչության պետ: Առաջարկել է նավթի հանքավայրերի արդյունավետ շահագործման հետախուզ. աշխ–ների նոր եղանակներ:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1943), Լենինի (1955, 1959), Հոկտ. հեղ–յան (1971), Աշխ. կարմիր դրոշի (1948), «Պատվո նշան» (1943) շքանշաններ:

ՕՎԱՆԵՍՈՎԱ Արշա Համբարձումի (1906–1990), կինոռեժ.: ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1947): 1931–61–ին՝ Սոյուզկինոխրոնիկա միավորման ռեժ., 1959–61–ին՝ վավերագր. կինոյի արվեստանոցի հիմնադիր–ղեկ., 1931–46–ին՝ «Պիոներիա» կինոժուռնալի հիմնադիր–ռեժ.: Ֆիլմերից են՝ «Երիտասարդության տոնը» (1937), «Սովետական Հայաստան» (1950, սցենարի համահեղ.) ևն: Նկարահանվել է «Հաշիմ» ֆիլմում (1928, Հայֆիլմ): ԽՍՀՄ Պետ., Խաղաղության միջազգ. մրց–ներ (1950):

ՕՎԱՆՕՎԼՅԱՆ Հովհաննես Սեդրակի (1901–1958), խորհրդ. բանակի գեն–մայոր (1953): Տեխ. գիտ. թեկնածու (1951): Ծառայել է ՀՕՊ–ում: 1939–56–ին՝ բանակի զենիթ. հրետանու հրաձգատեխ. կոմիտեի պետ: Հեղինակ է զենիթ. հրետանու տեսությանը և կիրառությանը վերաբերող աշխ–ների:

ՕՎԱՋԻԳԻ ԴԱՇՏ, **Մնձուրի գոգհովիտ,** Ներքին Տավրոսի համակարգում՝ Մնձուր գետի վերնագավառում՝ 1300–1500 *մ* բարձր–յան վրա: Շրջապատված է Մնձուրի և Մերջանի լ–շղթաներով և Պագիկանի հրաբխ. լ–զանգվածով: Տիրապետում է լ–տափաստան. լանդշաֆտը՝ շագանակագույն հողերով ու տարախոտ. բուսածածկույթով:

«ՕՎԱՍԻՍ» («Օազիս»), գր., գիտ. ամսաթերթ (1928–29, Նիկոսիա): Խմբ–ներ՝ Սամուել Թումայան, Տիրան Լյուլեճյան:

ՕՎԻԴԻՈՍ, Պուբլիոս Օվիդիոս Նազոն (Publius Ovidius Naso, մ. թ. ա. 43–մ. թ. մոտ 18), հռոմեացի բանաստեղծ: Հեղինակ է սիրային էլեգիաների, ուղերձների, «Սիրո արվեստը» և «Միջոցներ սիրո դեմ» խրատ. պոեմների, «Մետամորֆոզներ» առասպելաբան. էպոսի (պարունակում է 250 դից. և բանահյուս. զրույցներ), «Վշտալի եղերերգեր», «Նամակներ Պոնտոսից» գործերի:

ՕՎԻՄԲՈՒՆԴՈՒ, **մբունդու,** ժողգ Անգոլայի արմ–ում: Ընդհ. թիվը՝ շուրջ 4,7 մլն (2010): Լեզուն՝ ումբունդու: Հավատացյալները հիմնականում կաթոլիկ և բողոքական են:

ՕՎԿԻԱՆԱՐԻՈՒՄ, ծովի ջրով լցված ավազան՝ ծով. կենդանիներ պահելու համար: Խոշոր Օ–ներ կան Սան Ֆրանցիսկոյում, Սան Դիեգոյում, Նեապոլում, Մոնտոպոլում և այլ քաղաքներում:

ՕՎԿԻԱՆԻՄ, Խաղաղ օվկ–ի կենտր. և հվ–արմ. մասի կղզիների ամբողջությունը: Արմ–ից եզերված է Ավստրալիայով և Մալայան կղզեխմբով, մյուս բոլոր կողմերից՝ կղզիներից զերծ օվկիանոս. գոտիով: Երբեմն համարվում է ինքնուրույն աշխարհամաս: Կազմված է Պոլինեզիայից, Միկրոնեզիայից և Մելանեզիայից: Երբեմն առանձնացվում է Նոր Զելանդիան: Կղզիների ընդհ. տարածքը՝ 1,26 մլն *կմ*², բն.՝ 41 մլն (2016), բարձր.՝ մինչև 5029 *մ* (Ջայա լ–ը՝ Նոր Գվինեա կղզում): Օ–ում են Կիրիբատի, Մարշալյան կղզիներ, Միկրոնեզիայի Դաշն. Հանրապետություն, Նաուրու, Նոր Զելանդիա, Պալաու, Պապուա Նոր Գվինեա, Սամոա, Սողոմոնի կղզիներ, Վանուատու, Տոնգա, Տուվալու, Ֆիջի պետությունները, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, ԱՄՆ–ի և Ֆրանսիայի տիրույթները:

ՕՎԿԻԱՆՈՍ, **Համաշխարհային օվկիանոս,** Երկրի ջր. թաղանթը, որը շրջապատում է մայրցամաքներն ու կղզիները և ունի աղային կազմի ընդհանրություն: Ընդհ. մակերեսը՝ 361,8 մլն *կմ*², ծավալը՝ 1500 մլն *կմ*³: Զբաղեցնում է Երկրի մակերևույթի 70,8 %–ը: Բաժանվում է 4 օվկ–ի՝ Խաղաղ, Ատլանտ., Հնդ., Հս. սառուցյալ: Միջին խոր.՝ շուրջ 3700 *մ*, առլգն՝ 10920 *մ* (Մարիանյան փողրակը՝ Խաղաղ օվկ–ում):

ՕՎԿԻԱՆՈՍԱՅԻՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ, ծով. հոսանքներ, ջր. զանգվածների առաջընթաց շարժում ծովերում և օվկ–ներում: Պայմանավորված են տիեզ. ձգողականության, շփման, մակընթացության և տեղատվության ուժերի ներգործությամբ: Օ. հ–ի ուղղության վրա մեծ ազդեցություն ունի Երկրի պտույտը, որի հետևանքով Հս. կիսագնդում հոսանքները շեղվում են իրենց հիմն. ուղղությունից դեպի աջ, Հվ. կիսագնդում՝ ձախ: Ըստ ծագման՝ Օ. հ. լինում են շփումային (ֆրիկցիոն), տիեզերաձգողական–գրադիենտային (ծովի, օվկ–ի մակերևույթի թեքությունից առաջացած) և մակընթացատեղատվային:

ՕՎՈՒՆՈՎ Յուրի Սեմյոնովիչ (1937–2014), ռուս կենսաքիմիկոս, իմունաբան: ՌԳԱ ակադ. (1992): ՌԳԱ Կոմիի գիտ. կենտրոնի ֆիզիոլոգիայի ինստ–ի տնօրեն (2004–14): Աշխ–ները վերաբերում են բակտեր. և ուռուցք. հականիւթների քիմ. կառուցվածքին և իմուն. հատկություններին: Առաջինն է ծով. անողնաշարներից անջատել իմունիտետը խթանող նյութերը՝ իմունոմոդուլյատորները:

ՌԳԱ Ի. Ի. Մեչնիկովի (1993) և Յ. Ա. Օվչիննիկովի (2003) անվ. մրց–ներ:

ՕՎՉԻՆՆԻԿՈՎ Լև Պավլովիչ (ծ. 1943), ռուս. կենսաքիմիկոս: ՌԳԱ ակադ. (1997): Ուսումնասիրել է բջջ. ռիբոնուկլեինային մասնիկները՝ ինֆորմոսոմները, հայտնաբերել բջջապլազմայի ՌՆԹ – կապող սպիտակուցները: Լենինյան մրց. (1976):

ՕՎՉԻՆՆԻԿՈՎ Միխայիլ Ֆեոդորովիչ (1913–1989), ռուս գրող, դրամատուրգ: 1937–ից՝ Հայաստանում: Հեղինակ է «Խիզախում» (1950, հայ. բեմ.՝ 1950), «Տարագիրները» (1955), «Շրջադարձ» (1956, հրտ.՝ 1957), «Նվիրական երգ» (1958) պիեսների, «Ինչու է աղմկում գետը» (1958), «Դժվար անցում» (1962, հրտ.՝ 1962), «Կրակոց սահմանի վրա» (1972) և այլ կինոսցենարների, «Պատահական հանդիպումներ» (1959), «Այնտեղ, կապույտ լեռներից անդին» (1983) ակնարկների ու պատմվածքների ժող–ների: ԽՍՀՄ Պետ. մրց. (1952):

ՕՎՉԻՆՆԻԿՈՎ Յուրի Անատոլևիչ (1934–1988), ռուս. քիմիկոս և կենսաքիմիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1970, փոխնախագահ՝ 1974–ից), ՀամԳԱ ակադ. (1985): Սոց. աշխ. հերոս (1981): Աշխ–ները վերաբերում են ֆիզիոլոգիապես ակտիվ նյութերի քիմիային և կենսբ. ազդեցության մոլ. մեխանիզմներին, կենսբ. թաղանթների ֆիզքիմ. հիմունքներին: Հաստատել է ասպարտատ–տրանսֆերազ ֆերմենտի ամինաթթվ. մնացորդների հաջորդականությունը զանգվածասպեկտրաչափ. եղանակով: Լենինյան (1978), ԽՍՀՄ Պետ. (1982) մրց–ներ:

ՕՎՋՅԱՆ Բենիամին (Բենիկ) Հովհաննեսի (1918–2005), դերասան: Ադրբ. ԽՍՀ (1973), ԼՂՀ (2000) ժող. արտիստ: 1935–ից՝ Բաքվի հայկ., 1947–ից՝ Ստեփանակերտի դրամատիկ. թատրոնների դերասան (Միքայել՝ Գ. Սունդուկյանի «Էլի մեկ զոհ», Նեզնամով՝ Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», Մովսես՝ Ա. Քալանթարյանի «Մովսես ապեր», ևն): Նկարահանվել է «Կամոյի վերջին սխրանքը» (1973), «Մենավոր ընկուզենի» (1986, երկուսն էլ՝ Հայֆիլմ) կինոնկարներում: ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ» մեդալ (2001):

ՕՎՍՅԱՆՆԻԿՈՎ Լև Վասիլևիչ (1919–2014), ռուս մաթեմատիկոս և մեխանիկոս: ՌԳԱ ակադ. (1987): Աշխ–ները վերաբերում են դիֆերենցիալ հավասարումներին, գազադինամիկային, հիդրոդինամիկային: Լենինյան (1958), ԽՍՀՄ Պետ. (1987) մրց–ներ:

ՕՎՍՅԱՆՆԻԿՈՎ Ֆիլիպ Վասիլևիչ (1827–1906), ռուս ֆիզիոլոգ–հյուսվածաբան: Համեմատ. նյարդահյուսվածաբանության և նյարդաֆիզիոլոգիայի հիմնադիրներից Ռուսաստանում: Մ. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1863): Հայտնաբերել է (1871) գլխուղեղում արյան ճնշումը կարգավորող գլխ. անոթաշարժ կենտրոնը:

«ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ», գիտամեթոդ. հանդես (1999–ից, Երևան): ՀՀ ԿԳՆ Կրթության ազգ. ինստ–ի հրտ–յուն: Խմբ.՝ Ելենա Երզնկյան:

ՕՏԱՐՈՒՄ, փիլ–սոցիոլոգ. հասկացություն. բնորոշում է մարդու և նրա գործունեության վերածումը ինքնուրույն ուժի, որը գերիշխում է նրա վրա և թշնամի է նրան: «Օ.» հասկացությունը ներմուծել է Գ. Հեգելը, զարգացել է Կ. Մարքսի և XX դ–ի փիլ–յան մեջ ու սոցիոլոգիայում:

«ՕՏԵՉԵՍՏՎԵՆՆԻԵ ԶԱՊԻՍԿԻ» («Отечественные записки» – «Հայրենական գրառումներ»), ռուս. հաս–քաղ., գր–գեղ., մշակույթ. ամսագիր (1839–84, Ս. Պետերբուրգ): Խմբ–ներ՝ Ա. Ա. Կրաևսկի, Ն. Ա. Նեկրասով, Ն. Կ. Միխայլովսկի, Մ. Ե. Սալտիկով–Շչեդրին, Գ. Զ. Ելիսեև: Գրաքննադատության բաժնի վարիչ՝ Վ. Գ. Բելինսկի: Շարունակել է *«Մոլրեաննսիկ»*–ի ավանդույթները:

ՕՏԻԱՏՐԻԱ, (< հուն.՝ us, սեռ. հոլ.՝ otos – ականջ և iatreia – բուժում), *քիթկոկորդաականջաբանության* բաժին. ուսումնասիրում է ականջի հիվանդությունները և մշակում բուժման մեթոդներ:

ՕՏԻՏ, տես *Ականջաբորբ*:

ՕՏՅԱՆ Գրիգոր Պողոսի (1834–1887), հաս–քաղ. գործիչ, հրապարակախոս: Օտյանների գերդաստանից: Մասնակցել է 1860–ի *Ազգային սահմանադրության*, 1875–76–ին՝ Միդհատ փաշայի հետ օսմ. սահմանադրության մշակմանը: Բեռլինի վեհաժողովի (1878) նախօրեին Կ. Պոլսի հայոց պատրիարքի հանձնարարությամբ

մշակել է Արմ. Հայաստանի բարենորոգումների ծրագրի նախագիծ: 1880–ից՝ վտարանդի (Փարիզ):

ՕՏՅԱՆ Երվանդ Խաչիկի (1869–1926), գրող–երգիծաբան, խմբ., հրապարակախոս: Հայ. գրկ–յան մեջ պատմաարկած. դեղեկտիվ ժանրի հիմնադիրը («Ապտյիլ Համիտ եւ Շերլօք Հոլմս», 1911, «Սալիհա հանըմ կամ Բանակը բռնաւորին դէմ», 1912): 1892–95–ին՝ ***«Հայրենիք»*** օրաթերթի օգնական–խմբ. (1896–ից՝ խմբ.), 1911–12–ին՝ ***«Արեւելք»*** պարբ–ի խմբ., 1901–08–ին՝ «Ազատ խօսք», 1903–05–ին՝ ***«Ազատ բեմ»***, 1910–ին՝ ***«Կառափնապտ»***, 1913–14–ին՝ ***«Մանանայ»*** և այլ պարբ–ների հրտ–խմբ.: Հեղինակ է «Յեղափոխութեան մանաբոյծները» (1898–99), «Պրոպագանդիստը» (1901), «Ճուղտպրիստ և ընկ.» (1910), «Կաղանդի վիպակ» (1895), «Ազգային բարերարը» (1905) և այլ վիպակների, ազգ. գործիչներին ծաղրող «Ընկեր Բ. Փանջունի» (1911, 1914, 1923) երգիծավեպի, «Միջնորդ տէր պապան» (1895–1920), «Գործի մարդիկ» (1900–01), «Ընտանիք, պատիւ, բարոյական» (1910), «Թաղականին կնիկը» (1915) վեպերի, «Նոր հարուստներ» (1919–20), «Թիւ 17 խաֆիէն» (հ. 1–4, 1919–21), «Կանաչ հովանոցով կինը» (1923), «Հայ Տիասբորան» (1924–25) թերթոնային վեպերի, «Ֆրանքօ–թրքական պատերազմ կամ Շարշըլը Արթին աղա» (բեմ.՝ 1906, հրտ.՝ 1909, համահեղ.) կատակերգության, «Տաներկու տարի Պոլսէն դուրս» (1912–13), «Անիծեալ տարիներ» (1918–19) հուշագրությունների, «Մեր երեսփոխանները» (1913) երգիծ. դիմանկարների շարքի և այլ գործերի:

ՕՏՅԱՆՆԵՐ, XIX–XX դդ–ի հաս–քաղ. գործիչների, գրողների, մանկավարժների գերդաստան Կ. Պոլսում: Հիմնադիրը՝ **Պողոս** Օ., XIX դ–ի սկզբին Կեսարիայից եկել է Կ. Պոլիս, աշխատել Գրիգոր ***Պալյանի*** մոտ և նրա հովանավորությամբ դարձել արքունի ճարտ.: Իր միջոցներով կրթել է Կ. Պոլսի մի խումբ պատանիների, որոնց թվում էին Հարություն ***Սվաճյանն*** ու Գրիգոր ***Օտյանը***: **Խաչիկ** Օ. սամ. պետ. հանձնաժողովի կազմում մասնակցել է Սան Ստեֆանոյի (1878) բանակցություններին: Զբաղվել է թարգմանությամբ: Կ. Պոլսի ճանաչված մանկավարժներից էր **Եվփիմե** Օ., իսկ ամենաերևելին Երվանդ ***Օտյանն*** է:

ՕՏՈ... (հուն.՝ us, սեռ. հոլ.՝ otos – ականջ), բարդ բառերի մաս. ցույց է տալիս ականջին, ականջի հիվանդություններին վերաբերելը (օր.՝ օտոսկլերոզ):

ՕՏՈՍԿԼԵՐՈԶ (< ***օտո...,*** հուն.՝ sklerosis – պնդացում, կարծրացում), հիվանդություն՝ պայմանավորված միջին և ներքին ականջում ոսկր. հյուսվածքի աճմամբ ու ծավալմամբ: Հանգեցնում է լսողության խորացող նվազման:

ՕՏՈՐԻՆՈԼԱՐԻՆԳՈԼՈԳԻԱ (< ***օտո***..., հուն.՝ rhis, սեռ. հոլ.՝ rhinos – քիթ, ***լարինգո***... և ...***լոգիա***), տես ***Քիթկոկորդականջաբանություն***:

ՕՏՍ (Ots) Գեորգ (1920–1975), էստոնացի երգիչ (բարիտոն): ԽՍՀՄ ժող. արտիստ (1960): 1945–ից՝ Էստ. ՕՖԹ–ի մենակատար (Դև՝ Ա. Ռուբինշտեյնի «Դև», Եվգենի Օնեգին՝ Պ. Ի. Չայկովսկու «Եվգենի Օնեգին», Յագո՝ Ջ. Վերդիի «Օթելլո», ևն): Հանդես է եկել նաև օպերետներում (Ֆ. Լեզարի «Ուրախ այրին», Ի. Կալմանի «Մարիցա», ևն), նկարահանվել կինոյում («Միստր Իքս», «Պատահական հանդիպում» ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1950, 1952, 1968):

ՕՍՏԱՎԱ (Ottawa), գետ Կանադայում, Սուրբ Լավրենտիոսի ձախ վտակը: Երկ.՝ 1120 ***կմ***, ավազանը՝ 147 հզ. ***կմ***^{2}, ջրի միջին ծախսը՝ 2000 ***մ***^{3}/***վ***: Ջրանցքով միացած է Օնտարիո լճին: Նավարկելի է մինչև Շողջեր ջրվեժը: Գործում է ջրէկ: Օ–ի ափին է Կանադայի մայրաքաղաք ***Օտտավան***:

ՕՍՏԱՎԱ, Կանադայի մայրաքաղաքը (1867–ից), նվինգստ համանուն գետի ափին: Բն.՝ 879,4 հզ. (Օ–Գատինո ագլոմերացիայում՝ ավելի քան 1,2 մլն, 2010): Գործարար և բարձրտեխնոլոգ. արտադր–յան կենտրոն է: Գործում են 2 համալսարան (անգլ. և ֆրանս.), Կանադայի Ազգ. թանգարանը, Պատկերասրահը ևն: Հիմնադրվել է 1820–ին:

ՕՏՏՈ (Otto) Նիկոլաուս Ավգուստ (1832–1891), գերմանացի կոնստրուկտոր: Ստեղծել է (1847) քառատակտ ներքին այրման շարժիչը:

ՕՏՏՈՆ I Մեծ (912–973), Գերմանիայի թագավոր՝ 936–ից, Հռոմ. սրբազան կայսրության կայսր՝ 962–ից՝ Սաքսոն. հարստությունից: ***Հայնրիխ I***–ի որդին: Ամրապնդել է թագավոր. իշխանությունը, 955–ին Լեխի ճակատամարտում պարտության է մատնել հունգարներին: 951–ին իրեն է ենթարկել Լոմբարդիան:

ՕՏՏՈՆ II (955–983), Հռոմ. սրբազան կայսրության կայսր՝ 973–ից՝ Սաքսոն. հարստությունից: ***Օտտոն I***–ի որդին: 976–ին ճնշել է Բավարիայի դքսի խռովությունը: Փորձել է նվաճել Հվ. Իտալիան, պարտվել է արաբներին (982):

ՕՏՏՈՆ III (980–1002), Հռոմ. սրբազան կայսրության կայսր՝ 983–ից՝ Սաքսոն. հարստությունից: ***Օտտոն II***–ի որդին: Փորձել է իրականացնել «համաշխարհային կայսրություն» (Հռոմ կենտրոնով) վերստեղծելու ծրագիր:

ՕՏՏՈՆ IV Բրաունշվեյգցի (1175/76–1218), Հռոմ. սրբազան կայսրության կայսր՝ 1198–ից: Նրա օրոք գահի համար սկսվել է տևական պայքար Վելֆերի (Օ. IV նրանց տոհմից էր) և Շտաուֆենների միջև: 1214–ին Բուվինի մոտ պարտվելուց հետո Օ. IV–ը զրկվել է իշխանությունից:

ՕՏՐԵՄԲՍԿԻ (Otrębski) Յան (1889–1971), լեհ լեզվաբան: «Լինգվա Պոզնանիենսիս» («Lingua Posnaniensis») հանդեսի խմբ. (հ. 1–5, 1949–55, հ. 7–9, 1959–63): Հեղինակ է հնդեվրոպ. լեզվաբ–յանը, բալթ. և սլավոն. լեզուների պատմությանը վերաբերող աշխ–ների: Անդրադարձել է հայ–ի բաղաձայն. համակարգի զարգացման խնդրին, հայ. բարբառների շնչեղ ձայնեղները համարել հայկ. նորագոյացում և փորձել պարզել դրանց առաջացման պատճառները:

ՕՐ, արևածագի և մայրամուտի միջև եղած լուսավոր ժամանակահատվածը: Օ–վա տևողությունը կախված է տվյալ վայրի աշխարհագր. լայն–յունից և փոխվում է Արեգակի հսկման փոփոխության հետ: Բևեռ. շրջանագծից այն կողմ Օ–վա տևողությունը կարող է գերազանցել 24 ***ժ***–ը (բևեռ. Օ.): Սովորաբար օր է կոչվում նաև օրուգիշերը, որպիսիք տարեկան 365 ¼ Օ. են:

ՕՐԱԶԳԵՑՆԵՐ, միջատների ընտանիք: Երկ.՝ 0,2–4 ***սմ***: Հայտնի է ավելի քան 2000 տեսակ: Գիշատիչ թրթուրներն ապրում են ջրում. ձկների կեր են, զարգացումը տևում է 1–3 տարի (մինչև 25 կերպարանափոխություն): Հասուն Օ. ապրում են մի քանի ***ժ***–ից մինչև մի քանի օր, որոշ տեսակներ՝ 1 օր (այստեղից՝ անվանումը):

ՕՐԱԳԻՐ, անձն., գիտ., հաս. օրեօր գրառումներ՝ կյանքի դեպքերին համընթաց: Վավեր. Օ–երը լայնորեն տարածվել են Անգլիայում XVII դ–ում, ապա՝ որպես գր. պատումի ձև, XVIII–XIX դդ–ում: Օ. առանձնահատուկ հնարավորություն է ընձեռում բացահայտելու գր. երկի հերոսի ներաշխարհը (օր.՝ Հ. Սենկևիչի «Առանց դավանանքի», Մ. Յ. Լերմոնտովի «Մեր ժամանակի հերոսը», Ֆ. Մ. Դոստոևսկու «Գրողի օրագիրը» ևն): Հայ. գրկ–յան մեջ Օ–ի ձևով երկեր են գրել Մ. Նալբանդյանը («Հիշատակարան»), Ռ. Պատկանյանը («Տիկին և նաժիշտ»), Լ. Շանթը («Երազ օրեր») և ուր.: Տես նաև ***Հուշագրություն***, ***Վավերագրական գրականություն***:

«ՕՐԱԳԻՐ Կ. ՊՈԼՍՈՅ», քաղ., ազգ–առևտր. օրաթերթ (1868–78, Կ. Պոլիս՝ հայ. և հայատառ թուրք., 1868–ին՝ «Օրագիր», 1876–ին՝ «Նորագիր», 1877–78–ին՝ «Նոր դար»): Խմբ–տնօրեններ՝ Օգսեն ***Խոճասարյան***, Հակոբ Խանճյան: ***«Ծիլն Ասարյի»*** (1866–67) թերթի շարունակությունն է:

ՕՐԱԳՅԱՆ Ժիրայր (Ջերարդո) Գրիգորի (1901–1962), նկարիչ: 1920–ից՝ Հռոմում: Հայրենասիրությամբ համակված գործերում (հատկապես՝ Մեծ եղեռնի թեմայով) մարդկանց կերպարներն առանձնանում են ցայտուն մաներայով, արտահայտիչ, թախծոտ աչքերով («Ջարդ» («Եղեռն»), «Յանկություն», 1951, «Նահատակներ», 1952, «Զոհեր», 1952, «Երեխաներ», 1960, «Սրճարանում», 1961, ևն): Օ–ի 100–ից ավելի գործեր ՀԱՊ–ում են:

«ՕՐԱԿԱՐԳ», տնտ. օրաթերթ (2011–ից, Երևան): «Սիվիլիթաս» հիմնադրամի հրտ–յուն: Գլխ. խմբ.՝ Կարեն Հարությունյան:

ՕՐԱՆ, ք–նվինգստ Այժիրում՝ Միջերկր. ծովի ափին, համանուն վիլայայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 678,3 հզ. (2010): Տրանսպորտ. հանգույց է, առևտր. կենտրոն: Հիմնադրվել է X դ–ում:

ՕՐԱՆԳՈՒՏԱՆ (մալայերեն՝ orang–utan – բառացի՝ անտառի մարդ), մարդանման կապիկ: Հասակը՝ մինչև 150 ***սմ***, կ. զ.՝ մինչև 150 (երբեմն՝ մինչև 200) ***կգ***: Էգերն զգալի փոքր են: Ձեռքերը երկար են (բացվածքը՝ մինչև 3 ***մ***): Մորթին՝ կարմրաշիկավուն: Ապրում է Կալիմանտան և Սումատրա կղզիների անտառներում: Բները կառուցում են ծառերի վրա, վայր են իջնում հազվադեպ: Սակավաթիվ են: Գրանցված են ԲՊՄՄ Կարմիր գրքում: Բազմանում են անազատ պայմաններում:

ՕՐԱՆԺ (Oranje, Orange), գետ Հվ. Աֆրիկայում: Երկ.՝ 1860 ***կմ***, ավազանը՝ 1020 հզ. ***կմ***^{2}, ջրի միջին ծախսը՝ 800 ***մ***^{3}/***վ***: Գլխ. վտակները՝ Կալեդոն և Վաալ: Սահանքավոր է: Գործում է ջրէկ:

ՕՐԱՏՈՐԻՈ (իտալ.՝ oratorio, < լատ. oro – ասել, աղերսել), մոնումենտալ երաժշտադրամատիկ. ստեղծագործություն՝ նվագախմբի, երգչախմբի, մեներգիչների (երբեմն՝ ասմունքողի) համերգ. կատարման համար: Ձևավորվել է XVI դ–ի վերջին՝ որպես հոգևոր երաժշտության ժանր, ավելի ուշ առաջացել են աշխարհիկ Օ–ներ: Օ–ի դաս. նմուշներ են ստեղծել Գ. Ֆ. Հենդելը, Յ. Հայդնը:

ՕՐԱՅՈՒԹՅՈՒՆ, երկարատև ժամանակահատվածների հաշվարկման համակարգ, որի հիմք է ընդունված երկիր. մարմինների տեսանելի շարժումների պարբերականությունը: Առավել տարածված են **արեգակնային** Օ–ները, որոնց հիմքում արեգակն. (արևադարձ.) տարին է: Տարածված են նաև **լուս–**

նային Օ–ները, որտեղ օգտագործվում են Լուսնի փուլերի փոփոխությունների շրջանայնությունը, և ավելի բարդ՝ **լուսնաարեգակնային** Օ–ները: Յուրաքանչյուր Օ–ային տարի միշտ պարունակում է ամբողջ թվով օրեր, ինչը հնարավոր չէ ճշտորեն կապել արևադարձ. տարվա (մոտ՝ 365, 2422 օր) կամ Լուսնի փուլերի փոփոխության շրջանի (մոտ՝ 29, 53 օր) տևողությունների հետ: Կարելի է հասնել այս կամ այն աստիճանի ճշտության, որով պայմանավորված է տարբեր Օ–ների գոյությունը: Օր՝ **հուլյան** Օ–ում 1 օրվա սխալը կուտակվում էր 128 տարում, իսկ ավելի ճշգրիտ **գրիգորյան** Օ–ում՝ ավելի քան 3300 տարում:

Հայաստանում օգտագործել են հայկ. օրացույցը՝ **հայկական տոմարը**: Ըստ ավանդության՝ հայկ. Օ–ի սկիզբը կապվում է Հայկ նահապետի՝ Բելի դեմ կռվում տարած հաղթանակի հետ (ըստ Ղ. Ալիշանի՝ մ. թ. ա. 2492), իսկ ամիսները կոչվել են Հայկի ուստրերի և դուստրերի անուններով: Հին հայկ. Օ–ային տարին սկսվել է Նավասարդ ամսի 1–ին (համապատասխանում է օգոստ. 11–ին): Տարին բաղկացած էր 12 ամսից, յուրաքանչյուրում՝ 30 օր, իսկ տարվա մնացած օրերը կազմում էին Ավելյաց կոչված ամիսը (5 կամ 6 օր՝ նահանջ տարիներին):

ՕՐԲԵԼԻ Լևոն Աբգարի (1882–1958), ֆիզիոլոգ, էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի ուսմունքի հիմնադիրներից: ԽՍՀՄ (1935), ՀԽՍՀ (1943) ԳԱ–ների, ԽՍՀՄ ԲԳԱ (1944) ակադ.: ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1934): Սոց. աշխ. հերոս (1945): Բժշկ. ծառայության գնդ–գնդ.: Հովսեփ և Ռուբեն *Օրբելիների* եղբայրը: Ի. Պ. *Պավլովի* աշակերտն ու աշխատակիցը: 1936–50–ին՝ ԽՍՀՄ ԲԳԱ Ի. Պ. Պավլովի անվ. էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի և բարձրագույն նյարդ. գործունեության ախտաբանության, 1956–58–ին՝ ԽՍՀՄ ԳԱ Ի. Մ. Սեչենովի անվ. էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի և կենսաքիմիայի ինստ–ների տնօրեն (վերջինիս՝ նաև հիմնադիրը): ԽՍՀՄ ԳԱ կենսբ. գիտ–յունների բաժանմունքի ակադ. քարտուղար (1939–48), փոխնախագահ (1942–46): Օ. ստեղծել է գիտ. նոր ուղղություններ էվոլյուցիոն և վեգետատիվ նյարդ. համակարգերի ֆիզիոլոգիաների բնագավառում: *Օրբելի–Գինեցինսկու երևույթի* հայտնաբերմամբ (1923) ստեղծել է նոր տեսություն: Ապացուցել է ուղեղիկի՝ օրգանիզմի վեգետատիվ ֆունկցիաների կարգավորող նշանակությունը: Մեծ ավանդ ունի ՀՀ–ում ֆիզիոլոգիայի զարգացման բնագավառում: Օ–ու անունով է կոչվել ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստ–ը Երևանում: Ծաղկաձորում գործում է *Օրբելի եղբայրների փուն–թանգարանը*:

Փարիզի կենսբ. ընկ–յան (1930), Բնախույզների գերմ. «Լեոպոլդինա» ակադ–ի (1931) անդամ:

Ի. Պ. Պավլովի անվ. (1937) և ԽՍՀՄ Պետ. (1971) մրց–ներ, Ի. Ի. Մեչնիկովի անվ. ոսկե մեդալ (1946):

ՕՐԲԵԼԻ Հովսեփ Աբգարի (1887–1961), արևելագետ, հնագետ, հաս. գործիչ: ԽՍՀՄ (1935), ՀԽՍՀ (1943) ԳԱ ակադ. և 1–ին նախագահը (1943–47): Լոնդոնի հնագիտ. ընկ–յան պատվ. (1944), Իրանի ԳԱ թղթ. (1945) անդամ: Լևոն և Ռուբեն *Օրբելիների* եղբայրը: 1920–ին՝ Պետրոգրադի Էրմիտաժի ավանդապահ, 1926–ին հիմնադրել և գլխավորել է Արևելքի բաժինը, 1934–51–ին՝ Էրմիտաժի տնօրեն: ՀՄՊ–ի տարիներին կազմակերպել է Էրմիտաժի արժեքների տարհանումը Սվերդլովսկ (այժմ՝ Եկատերինբուրգ), 1946–ին Նյուրնբերգի դատավարությանը մասնակցել է որպես մեղադրող կողմի վկա: 1937–38–ին (միաժամանակ)՝ ԽՍՀՄ ԳԱ Նյութ. մշակույթի պատմության ինստ–ի տնօրեն, 1938–ին ընտրվել է *Արմֆանի* նախագահության նախագահ: 1956–ին հիմնադրել է և ցկյանս ղեկավարել ԽՍՀՄ ԳԱ Արևելագիտ. ինստ–ի Լենինգրադի բաժանմունքը:

Աշխ–ները հիմնականում վերաբերում են կովկասագիտ–յանը, հայագիտ–յանը (Հայագիտ. հետազոտություններ, պր. 1, 1974), հնագիտ–յանը (կազմել է Անիի հնադարանում պահվող և այժմ մեծ մասամբ կորած գտածոների գիտ. նկարագրությունը ևն): Օ. ժամանակակից հայ վիմագրագիտ–յան հիմնադիրն է: Զբաղվել է նաև բանահավաքությամբ, բարբառագիտ–յամբ (կազմել է հայ. և քրդ. բարբառների բառարաններ), հին և միջնադար. իրան. արվ–ի պատմությամբ և այլ հարցերով:

Լենինի (2), ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի (2), Իրանի «Գիտ. ծառայությունների համար» 1–ին աստիճանի շքանշաններ:

ՕՐԲԵԼԻ Ռուբեն Աբգարի (1880–1943), հնագետ, ստորջրյա հնագիտ–յան հիմնադիրներից: Լևոն և Հովսեփ *Օրբելիների* եղբայրը: Նրա ղեկավարած արշավախումբը հայտնաբերել է ստորջրյա հուն. քաղաքների մնացորդներ Ղրիմում, Օլվիայում, Խերսոնեսում և այլուր: Աշակել է հնագույն իրերը ջրից հանելու և պահպանելու մեթոդներ, ներմուծել «ստորջրյա հնագիտություն» եզրույթը (հետագայում առաջարկել է «ջրահնագիտություն» տարբերակը):

ՕՐԲԵԼԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՏՈՒՆ–ԹԱՆԳԱՐԱՆ, բացվել է 1982–ին Ծաղկաձորում՝ Օրբելյանների ամառանոցում: Բաղկացած է 1 հարկաբաժնից, որտեղ պահվում է շուրջ 1750 ցուցանմուշ (մոտ 800–ը՝ մշտ. ցուցադրությամբ): Առանձին սրահներում ներկայացված են Լևոն, Հովսեփ, Ռուբեն *Օրբելիների* կյանքին ու գիտ. գործունեությանը վերաբերող վավերագրեր, գրառումներ, ձեռագրեր, լուսանկարներ, անձն. ու կենցաղ. իրեր, տարբեր լեզուներով հրտ–յուններ ևն:

ՕՐԲԵԼԻԱՆԻ Սուլխան–Սաբա (1658–1725), վրացի գրող, գիտնական, քաղ. գործիչ, վանական (1698): 1724–ից՝ տարագիր (Ռուսաստան, Վախթանգ VI–ի հետ): Նոր գր. վրաց–ի սկզբնավորողներից: Հեղինակ է «Հնարանքի իմաստություն» (հայ.՝ 1959) առակների ժող–ի, «Ճանապարհորդություն Եվրոպայում» գրքի, կրոն. աշխ–ների: Կազմել է վրաց–ի բացատրական բառարան:

ՕՐԲԵԼԻ–ԳԻՆԵՑԻՆՍԿՈՒ ԵՐԵՎՈՒՅԹ, գորտի կմախք. մկանի հոգնածության վերացման երևույթ՝ նրա սիմպաթիկ նյարդաթելը գրգռելիս: Նկարագրել են (1923) Լևոն *Օրբելին* ու ռուս. ֆիզիոլոգ Ա. Գ. Գինեցինսկին (1895–1962): Դրանով հաստատվել է նյարդ. համակարգի հարմարվողականացող. ֆունկցիան, որի հիմքում ընկած է հումորալ կարգավորման մեխանիզմը՝ պայմանավորված անոթաշարժիչ նյարդերից կատեխոլամինների արտազատմամբ:

ՕՐԲԵԼՅԱՆ Կոնստանտին Աղապարոնի (1928–2013), կոմպոզիտոր: ՀՀ (1974), ԽՍՀՄ (1979) ժող. արտիստ: Կոնստանտին Հ. *Օրբելյանի* հորեղբայրը: 1949–52–ին՝ Հայաստանի էստրադ. նվագախմբի դիրիժոր, 1956–92–ին՝ գեղ. ղեկ.: Հեղինակ է լար. կվարտետի (1956), սիմֆոնիայի (1961), «Անմահություն» բալետի (բեմ.՝ 1969, Երևան), «Տոնական նախերգանքի» (1967), «Զանգեզուր» սիմֆ. պոեմի (1973), խորեոգրաֆիկ պատկերների, երգերի («Միրում եմ քեզ, իմ Մոսկվա», «Երևանյան մեղեդի», «Կեչիների աղմուկը, «Արևիկ», «Գալիս ես, գալիս ես» ևն), պիեսների, ջազ. կոմպոզիցիաների, կինոյի և թատրոնի երաժշտության («Ճանապարհ դեպի կրկես», 1963, «Թռիչք անդունդի վրայով», 1959, «Փառքի օղակներ», 1962, «2–Լեռնիդ–2», 1970, բոլորը՝ Հայֆիլմ, ևն): Երիտասարդության և ուսանողների համաշխ. VI փառատոնի ոսկե մեդալ (1957, Մոսկվա), երգի (1967, Բուդապեշտ), ջազ. երաժշտության (1966, Պրահա) միջազգ. փառատոների մրց–ներ:

ՀՀ «Պատվո շքանշան» (2012):

ՕՐԲԵԼՅԱՆ Կոնստանտին Հարրիի (ծ. 1956), դաշնակահար, դիրիժոր: Կոնստանտին Ա. *Օրբելյանի* եղբորորդին: ՌԴ վաստ. արտիստ (2004): Ս. Պետերբուրգի արվ–ի և գիտ–յունների ակադ–ի անդամ (2000): 1991–ից՝ Մոսկվայի կամեր. նվագախմբի գեղ. ղեկ. և դիրիժոր, «Սանկտ Պետերբուրգի պալատներ» միջազգ. փառատոնի հիմնադիր–ղեկ., Մոսկվայի «Կրեմլի թանգարանների երաժշտական գանձերը» համերգաշարի հիմնադիր, 2016–ից՝ ԵՕՖԹ գեղ. ղեկ.: «Տարվա լավագույն կոնցերտ» մրց. (1987, Անգլիա):

ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐ, իշխան. տոհմ Հայաստանում և Վրաստանում: Որոշ ուսումնասիրողների կարծիքով՝ Օ. Գուգարքում հաստատված, քաղկեդոնականություն ընդունած Սամիկոնյանների մի ճյուղն են: Ըստ *Ստեփանոս Օրբելյանի*՝ «Օրբել» անունն առաջացել է Օրբեթ ամրոցում նրանց հաստատումից հետո: Օ. Վրաց արքունիքում վարել են թագադիր ասպետի, սպարապետի և այլ պաշտոններ: Գեորգի III թագավորի մահից (1184) հետո ամիրսպասալար Իվանե Օրբելու եղբոր որդիներից մեկը՝ Իվանեն, վերադարձել է Գուգարք, Թամար թագուհուց հետ ստացել Օրբելիների տիրույթների մի փոքր մաս և Օրբեթ ամրոցը: Մյուսը՝ Էլիկումը, հաստատվել է Նախճավանում: Դրանով Օ–ի տոհմը բաժանվել է 2 ճյուղի (վրաց Օրբելիանի և հայ Օրբելյանների):

Մյունիքում Օ. ստեղծել են Զաքարյաններից վասալ. կախում ունեցող իշխանապետություն: *Սմբատ Օրբելյանը* առաջնություն է նվաճել մրցակից տոհմի՝ *Խաղբակյանների* նկատմամբ, Մյունիքում հորջորջվել «իշխանաց իշխան» և անգամ «արքա»: Իշխանապետությունն իր հզորությունը պահպանել է Տարսայիճ Օրբելյանի (1273–90) և նրա հաջորդների օրոք: 1286–ին Օ. իրենց ձեռքն են վերցրել նաև Մյունիքի հոգևոր իշխանությունը. մետրոպոլիտ է օծվել իշխանապետի որդին՝ պատմիչ Ստեփանոս Օրբելյանը: 1386–ին, երբ *Լանկ Թամուրը* գրավել է գահանիստ Որոտնաբերդը, Օ–ի իշխանապետությունը դադարել է գոյություն ունենալուց: XV դ–ում Օ–ի զգալի մասը լքել է երկրամասը. 1437–ին Վրաստան է գաղթել Բեշքեն Օրբելյանը՝ իր հետ տանելով շուրջ 6 հզ. ընտանիք: Այնուհետև Օ–ի տոհմն էական դեր չի խաղացել քաղ. ասպարեզում:

ՕՐԲԻՏԱԼ, էլեկտրոնի՝ ատոմում (ատոմ. Օ.) և մոլ–ում (մոլ. Օ.) տեղադրության ամենա-

հավանական տեղը: Օ-ի մասին պատկերացումը ատոմների և մոլ-ների հատկությունների քվանտաքիմ. հաշվարկի հիմքն է:

ՕՐԳԱՆ (հուն.՝ organon – զենք, գործիք), 1. կենդ. կամ բուս. օրգանիզմի մաս, որը կատարում է որոշակի ֆունկցիա (օր.՝ կենդանիների սիրտը, լյարդը, բույսերի արմատը, ցողունը ևն): 2. Աշխատող մեքենայի, գործիքի բանող մարմինը:

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀՀ ԳԱԱ, ստեղծվել է 2006-ին: Ներառում է Ա. Մնջոյանի անվ. *Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը*, *Օրգանական քիմիայի ինստիտուտը* և *Մոլեկուլի կառույցի ուսումնասիրման կենտրոնը*: Տնօրեն՝ Վիգեն Թոփուզյան:

ՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹ, 1. **քիմիայում**, նույնն է, ինչ օրգ. միացությունները (ածխածնի միացություններն այլ տարրերի հետ): 2. **Երկրաբանության մեջ**, բնական օրգ. միացությունների բարդ խառնուրդ, որը քիչ քանակով պարունակվում է հողում, ծով. և լճ. նստվածքներում, լեռնապարներում, ինչպես նաև մակերևութ. և ստորգետնյա ջրերում: Օ. ն-ի առաջնային աղբյուրը կենդ. և բուս. աշխարհներն են: Տարբերում են հումուս. և նեխատիղմ. Օ. ն-եր: Նստվածք. ապարներում միջին պարունակությունը՝ 15–20 *կգ/մ*³: Կազմում են ածուխների ու այրվող թերթաքարերի հիմն. զանգվածը և նավթի ու այրվող գազերի աղբյուր են:

ՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱ, ուսումնասիրում է օրգ. միացությունները և նրանց փոխակերպման օրենքները: Որպես քիմիայի ինքնուրույն բնագավառ՝ զարգացել է XIX դ-ում: «Օ. ք.» եզրույթն առաջարկել է Ի. *Բերցելիուսը* 1827-ին: Օ. ք-ի զարգացման վրա մեծ ազդեցություն է ունեցել քիմ. կառուցվածքի տեսությունը (Ա. Մ. Բուտլերով, 1861): Ածխածնի՝ բազմաթիվ տարրերի միանալու և տարբեր բաղադրությամբ ու կառուցվածքով միացություններ (շղթ., ցիկլիկ, ատոմների միջև պարզ և կրկնակի կապերով) առաջացնելու ունակությունը պայմանավորում է օրգ. միացությունների բազմազանությունը (ներկայում գրանցվել է ավելի քան 50 մլն միացություն): Բազմաթիվ օրգ. միացությունների սինթեզը հանգեցրել է արդ-յան նոր ճյուղերի՝ սինթետիկ ներկերի, պոլիմերների, արհեստ. հեղուկ վառելիքի ևնի ստեղծմանը: Օ. ք-ի հաջողությունները հնարավորություն են տվել ռացիոնալ ձևով օգտագործելու նավթը, քարածուխը, բնական գազը, անտառաքիմ. և այլ հումքեր, Օ. ք-ի եղանակներով՝ հաստատվել սպիտակուցների, նուկլեինաթթուների և այլ բնական միացությունների կառուցվածքը, սինթեզվել վիտամիններ, որոշ հորմոններ, ֆերմենտներ: Օ. ք-ի որոշ ուղղություններ արագ զարգացման շնորհիվ դարձել են առանձին բնագավառներ, օր.՝ բարձրմոլ. միացությունների քիմիան ևն:

ՀՀ-ում ժամանակակից Օ. ք. հիմնադրել է Ստեփան Ղամբարյանը ԵՊՀ-ում: 1957-ին ՀԽՍՀ քիմիայի ինստ-ի օրգ. քիմիայի մասնաճյուղի հիմքի վրա ստեղծվել է *Օրգանական քիմիայի ինստիտուտը*, ավելի ուշ՝ *Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը*:

ՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀՀ ԳԱԱ, *Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի* (2006) կազմում: Կազմակերպվել է 1957-ին՝ ՀԽՍՀ Քիմիայի ինստ-ի օրգ. քիմիայի մասնաճյուղի հիմքի վրա: Հետազոտությունների հիմն. ուղղություններն են ցածրմոլ. բնական կենսակարգավորիչների, բուրավետ ու զգայորոշման նյութերի, բուրավետիչների և այլ մոլ-ների կառուցվածքը, պոլիմեր. նյութերի և բաղադրանյութերի նպատակասլաց սինթեզի գիտ. հիմունքների մշակումն ու ներդրումը, գիտ. ուսումնասիրությունների համար անհրաժեշտ քիմ. ռեակտիվների սինթեզի ժամանակակից եղանակների մշակումը, ներդրումը և արտադր-յան կազմակերպումը: Հետազոտությունների հիմն. ուղղությունը հագեցած միացությունների, ամինամիացությունների և բարձրմոլ. միացությունների քիմիան է: Հրատարակել է «Չհագեցած միացությունների քիմիա» (ռուս., 1979, 1994,) ժող-ը: Տնօրեններ՝ Ա. Գասպարյան, Ստեփան Մացոյան, Շալիկո Բադանյան, Արա Գյուլնազարյան, Գագիկ Հասրաթյան (2004-ից):

ՕՐԳԱՆԵԼԵՆԵՐ, կայուն բջջ. կառուցվածքներ, որոնք կատարում են գենետիկ. տեղեկույթի պահպանման և հաղորդման, նյութերի փոխադրման, նյութերի և էներգիայի փոխակերպման ֆունկցիաներ ևն: Օ. են քրոմոսոմները, բջջաթաղանթները, միտոքոնդրիաները, Գոլջիի համալիրը ևն: Երբեմն Օ. կոչվում են նաև *օրգանոիդներ*:

ՕՐԳԱՆԻԶՄ (միջնադար. լատ.՝ organizo – կազմակերպել, կանոնավոր տեսք տալ), կենդանի էակ՝ օժտված որոշակի հատկությունների ամբողջությամբ, որով տարբերվում է անկենդան նյութից: Օ-ների մեծ մասն ունի բջջ. կառուցվածք: Ամբողջ օրգանիզմի ձևավորումը կենսընթաց է, որը ներառում է կառուցվածքների (բջիջներ, հյուսվածքներ, օրգաններ) և ֆունկցիանեի տարբերակումն ու նրանց ինտեգրումը ինչպես օնտո-, այնպես էլ ֆիլոգենեզում:

ՕՐԳԱՆՈՒՄՆԵՐ, կենդ. և բուս. բջիջների մշտ. մասնագիտացված կառուցվածքներ: Յուրաքանչյուր օրգանոիդ իրականացնում է բջջի կենսագործունեության համար անհրաժեշտ որոշակի գործառույթ: Բջջի կենսագործունեության ցանկացած արտահայտություն արդյունք է նրա փոխկապակցված տարրերի, հատկապես՝ Օ-ի համաձայնեցված աշխ-ի: Օ. են միտոքոնդրիաները, Գոլջիի համալիրը, բջջ. կենտրոնը, ներպլազմային ցանցը, ռիբոսոմները ևն, իսկ բուս. բջիջներում՝ նաև պլաստիդները, սֆերոսոմները ևն:

ՕՐԳԱՆՈԼԵՊՏԻԿ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (< *օրգան* և հուն.՝ leptikos – ընկալող), արտաքին միջավայրի օբյեկտների (ջուր, օդ, սնունդ) հատկությունները, որոնք բացահայտվում և գնահատվում են զգացողության (օր.՝ համի, հոտառության) օրգաններով:

ՕՐԴԵՐՆԵՐ *ճարտարապետական սյունակարգեր*, հենակահեծան. համակարգի՝ որոշակի կանոններով մշակված ճարտ. կառուցվածք. տիպեր: Առաջացել և զարգացել են Հին Հունաստանում մ. թ. ա. VI–III դդ-ում: Տես նաև *Դորիական օրդեր*, *Կորնթական օրդեր*, *Հոնիական օրդեր*:

ՕՐԴԻՆԱՏ (լատ.՝ ordinatus – կարգավորված, որոշված), կետի դեկարտյան կոորդինատներից մեկը, սովորաբար՝ 2-րդը: Նշանակվում է y տառով:

ՕՐԴՅԱՆ Անուշ Միքայելի (ծ. 1961), սրտաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1989): ՌԲԿԱ անդամ (2001): Աշխ-ները վերաբերում են անկայուն կրծք. հեղձուկի ժամանակ արյան թրոմբահարուցիչ հատկություններին, սրտամկանի ինֆարկտի վաղ բարդությունների դեղորայք. և վիրահատ. բուժմանը: ՌԴ թերապևտների գիտ. ընկ-յան քարտուղար (1999–2001):

ՕՐԴՅԱՆ Էդուարդ Համբարձումի (ծ. 1938), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (1981), պրոֆ. (1984): Աշխ-ները վերաբերում են տնտ. մեխանիզմի, պետ. կառավարման, տեղ. ինքնակառավարման, աշխ-ի և արտադրանքի որակի ու արդյունավետության տես. և մեթոդաբան. խնդիրներին: ԽՍՀՄ ԺՏՆՅ արծաթե մեդալ (1981, 1983), «Սովետական Հայաստան» թերթի «Ոսկե գրիչ» մրց.:

ՕՐԴՅԱՆ Միքայել Բախշիի (ծ. 1928), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դ-ր (1968), պրոֆ. (1970): Աշակել է պոլիվինիլսպիրտի ստացման թափոնից՝ մեթիլացետատից, քացախաթթվի և մեթանոլի ստացման անընդհատ եղանակ, որը ներդրվել է Սևերոդոնեցկի (Ուկրաինա) քիմ. կոմբինատում (1970): Սինթեզել է կենսաբանորեն ակտիվ պորֆիրիններ, արյան ճնշումը և պսակաձև անոթների դիմադրողականությունն իջեցնող և հակաջղաձգ. հատկություններ ունեցող նյութեր: ՌԲԿԱ անդամ (2000):

ՕՐԴՈՎԻԿԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ (հա-մակարգ, փուլ), **օրդովիկ,** պալեոզոյան դարաշրջանի 2-րդ փուլը: Հաջորդում է քեմբրիի, նախորդում՝ սիլուրի ժամանակաշրջաններին: Տևողությունը՝ 47 մլն տարի (490 ± 2 մլն տարուց մինչև 443 ± 2 տարի): Սահմանել է անգլիացի երկրաբան Ռ. *Մուրչիսոնը* 1835-ին: Անվանումն առաջարկել է անգլիացի երկրաբան Չ. Լապուորսը (1879)՝ Ուելսի տարածքում բնակված հին ցեղի՝ օրդովիկների անունով: Ստորաբաժանվում է 3 բաժնի (ստորին, միջին, վերին): Օ. ժ-ում առաջացել են ժամանակակից ծով. անողնաշարավորների բոլոր տեսակները, անծնոտավոր ձկնանմանները՝ առաջին ողնաշարավորները, 1-ին բուսատերը ևն: Ավարտին տեղի է ունեցել ուժեղ սառցապատում, որի հետևանքով վերացել են ծով. օրգանիզմների շատ խմբեր: Շարունակվել է կալեդոնյան ծալքավորությունը:

ՕՐԴՈՒ, գվո Տրապիզոնի նահգ-ում, կենտրոնը՝ Օրդու: Տարածքը մ. թ. ա. III դ-ում մտել է Փոքր Հայքի, մ. թ. ա. II դ-ում՝ Պոնտոսի թագավորությունների կազմի մեջ: V–XIII դդ-ում եղել է բյուզ. նահգ, XVI դ-ում նվաճել են թուրքերը:

Հայերը Օ-ում ստվարացել են հատկապես 1820-ական թթ-ին: Մեծ եղեռնի նախօրեին այնտեղ բնակվել է շուրջ 15 հզ. հայ, որից 3 հզ.՝ ք-ում: Գործել է Սբ Աստվածածին եկեղեցին, հայկ. երկսեռ դպրոցը ևն: Հայերի մեծ մասը 1915–18-ին զոհվել է: Փրկվածները տարագրվել են:

ՕՐԴՈՒԲԱԴ, **Օրդուար,** ք. Ադրբեջանում, Նախիջևանի ԻՀ Օրդուբադի շրջկենտրոնը, Զանգեզուրի լ-շղթայի նախալեռնեում: Բն.՝ 10,3 հզ. (2012):

Օ. պատմ. Հայաստանի Գողթն գվո-ի հնամենի բնակատեղիներից է: 1829–32-ին ուներ 3444, 1880-ին՝ 3489, 1906-ին՝ 5102 հայ և թուրք (Օ-ում հայերը բնակվել են մինչև 1988-ը) բնակիչներ: 1854-ին այստեղ բացվել և ընդմիջումներով գործել է (մինչև 1917-ը) հայկ. ուսումնարան: Բազմաթիվ եկեղեցիներից պահպանվել է Սբ Ստեփանոսը (XIII դ.): Պահպանվել

են մի քանի մզկիթներ (XVIII–XIX դդ.), ռուս. եկեղեցի (XIX դ.), բնակելի տներ ևն:

ՕՐԴՈՒԻ ԲԱՐԲԱՌ, հայ-ի «կը» ճյուղի բարբառ: Խոսվել է Սև ծովի ափին, Տրապիզոնից արմ.՝ Օրդու բ–ում: Ունի երկաստիճան խլազուրկ (բ–փ) բաղաձայն. համակարգ:

ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ Աշոտ Արսենի (1953–2000), կենսաֆիզիկոս: Կենսբ. գիտ. դ–ր (1989), պրոֆ. (1987): 1992–2000-ին աշխատել է Մոսկվայի մի շարք ԳՀԻ-ներում: Աշխ-ները վերաբերում են մաթ. կենսաչափության հիմնախնդիրներին. զբաղվել է կենսբ-յան և բժշկագիտ-յան մեջ մաթեմատիկայի և ծրագրավորման կիրառ. մեթոդների մշակման հարցերով:

ՕՐԴՈՒՅԱՆ Սեմյոն Լյուդվիգի (ծ. 1951), վիրաբույժ: Բժշկ. գիտ. դ–ր (1990), պրոֆ. (1996): Բժշկ. ծառայության մայոր (2001): Աշխ-ները վերաբերում են ստամոքսաղիք. համակարգի օրգանների վիրահատ. բուժմանը: Առաջարկել է լյարդի, լեղուղիների սուր և քրոնիկ. բորբոք. հիվանդությունների և հետվիրահատ. թարախ. բարդությունների պատճառագիտ-յան, ախտածագման ու բուժման վիրաբուժ. մեթոդներ: Հայկ. բանակի գլխ. վիրաբույժ (1999–2001): ԵՊԲՀ ոսկե մեդալ (2000):

ՕՐԵԳՈՆ (Oregon), նահգ ԱՄՆ-ում՝ Խաղաղ օվկ-ի ափին: Տարածքը՝ 251,2 հզ. *կմ*^{2}, բն.՝ 4 մլն (2015): Վարչ. կենտրոնը՝ Սեյլեմ:

ՕՐԵՄ, **Օրեամ** (Oresme), Նիկոլա (մոտ 1323–1382), ֆրանսիացի գիտնական: Աշակել է հարաբերությունների տեսությունը, ներմուծել կոտորակ. աստիճանի ցուցիչները: Օ–ի անվան հետ են կապում ուղղանկյուն կոորդինատների համակարգի կառուցման առաջին փորձերը, արագացման և միջին արագացման հասկացությունների ներմուծումը:

ՕՐԵՆԲՈՒՐԳ, ք. ՌԴ-ում, համանուն մարզի վարչ. կենտրոնը Ուրալ գետի ափին: Բն.՝ 524 հզ. (2009): Երկաթղ. հանգույց է: Հիմնադրվել է 1736-ին:

ՕՐԵՆԲՈՒՐԳԻ ՄԱՐԶ, վտմ ՌԴ Մերձվոլգյան դաշն. օկրուգում: Տարածքը՝ 123,7 հզ. *կմ*^{2}, բն.՝ շուրջ 2,1 մլն (2009): Ունի 35 շրջան, 12 քաղաք, 1 քտա: Վարչ. կենտրոնը՝ Օրենբուրգ: Կազմավորվել է 1934-ին:

ՕՐԵՆՄԳԻՐՔ, համակարգված միասն. օրենսդր. ակտ. կարգավորում է հաս. հարաբերությունների որևէ համասեռ բնագավառ (քաղաքաց. Օ., քր. Օ., ընտան. Օ. ևն): Օ-ին բնորոշ է որոշակի կառուցվածքը (ընդհ. մաս, հատուկ մաս, հատվածներ, գլուխներ):

ՕՐԵՆՄԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, 1. օրենք հրատարակելու լիազորությունների ամբողջությունը: 2. Օրենք հրապարակելու լիազորություն ունեցող պետ. մարմինների համակարգը: 3. Պետ. իշխանության ոլորտ այն պետություններում, որտեղ գործում է իշխանության բաժանման սկզբունքը:

ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅՈՒՆ, 1. օրենքներ հրապարակելու պետ. իշխանության բարձրագույն մարմինների գործունեությունը: 2. Տվյալ պետության մեջ գործող կամ որոշակի ճյուղի (քաղաքաց., աշխ.) հարաբերությունները կարգավորող իրավ. նորմերի ամբողջությունը:

ՕՐԵՆՔ (իրավ.), սահմանադրությամբ նախատեսված կարգով պետ. իշխանության բարձրագույն մարմնի ընդունած նորմատիվ ակտ: Մյուս նորմատիվ ակտերի (հրաման, որոշում ևն) նկատմամբ ունի բարձր իրավաբ. ուժ: Ժամանակակից հաս-յունում իրավունքի գլխ. աղբյուրն է:

«ՕՐԵՆՔ», ազգ., հաս. շաբաթաթերթ (1905, Ալեքսանդրիա): Խմբ-ներ՝ Երվանդ Օտյան, Վահան Թեքեյան, Միհրան Տամատյան:

ՕՐԵՍԹԵՍ, *Ագամեմնոնի* և *Կլիտեմնեստրայի* որդին հուն. դից-յան մեջ, որը սպանել է մորը և նրա սիրեկան Էգիսթեսին՝ լուծել հոր սպանության վրեժը: Օ-ի առասպելն ընկած է *Էսքիլեսի*, *Սոֆոկլեսի*, *Եվրիպիդեսի* ողբերգությունների սյուժեի հիմքում:

«ՕՐԵՐ», ազգ., քաղ., մշակութ. համաեվրոպ. երկամսյա հանդես (1999-ից, Պրահա՝ հայ.): Կովկաս-Արևելյան Եվրոպա լրատվ. կենտրոնի հրտ-յուն: Հիմնադիրխմբ.՝ Հակոբ Ասատրյան:

ՕՐԹՈ–, ՄԵՏԱ–, ՊԱՐԱ–, քիմիայում, բենզոլ. օղակում 2 տեղակալիչների միմյանց նկատմամբ տեղադիրքերի նշանակումը (օ–, մ–, պ–): ***Օրթո***–միացություններում տեղակալիչները գտնվում են 1,2–, ***մետա***–միացություններում՝ 1,3–, և ***պարա***–միացություններում՝ 1,4-դիրքերում, օր.՝ 1,2-երկմեթիլբենզոլն անվանում են ***օրթո***–քսիլոլ: «***Օրթո***» և «***պարա***» նախածանցներն օգտագործում են նաև տարբեր թվերով հիդրօքսիլ. խմբեր պարունակող թթվածնավոր թթուների անուններում (օրթո՝ առավելագույն, մետա՝ նվազագույն), օր.՝ օրթոֆոսֆորական՝ $(HO)_3PO$, և մետաֆոսֆորական՝ $HOPO_2$, թթուներ:

ՕՐԹՈԳՆԵՆԶ (< հուն. orthos – ուղիղ և …*գենեզ*), **օրթոէվոլյուցիա**, կենդանի բնության զարգացման տեսություն, համաձայն որի՝ օրգանիզմների էվոլյուցիան ընթանում է խիստ որոշակի ուղղությամբ:

ՕՐԹՈԳՆԱԹԻԶՄ (< հուն. orthos – ուղիղ և gnatos – ծնոտ), **ուղղածնոտություն**, կիսաղեմի տիպ մարդաբանության մեջ, երբ գանգի դիմային մասն արտացցված չէ դեպի առաջ: Քթի արմատը վերին ծնոտի մակերևույթին միացնող գիծն ուղղաձիգ է: Օ. հակառակադիր է առաջնածնոտությանը (*պրոգնաթիզմին*):

ՕՐԹՈԿԼԱԶ, կալիումային դաշտ. սպաթ՝ $K[AlSi_3O_8]$: Խառնուրդների ձևով պարունակում է Na (մինչև 8 % Na_2O), սակավ՝ Ba, փոքր քանակներով՝ Fe, Ca, Rb, Cs ևն: Բաց վարդագույն է, գորշ դեղին ևն: Փայլը՝ ապակու: Կարծր.՝ 6,5, խտ.՝ 2,6 *գ/սմ*^{3}: Մագմատիկ ապարների կարևորագույն ապար կազմող միներալներից է: Օգտագործվում է ապակու և խեցեգործ. արդ-յան մեջ:

ՕՐԹՈՊԵԴԻԱ (< հուն. orthos – ուղիղ, կանոնավոր և paideia – դաստիարակություն), կլինիկ. բժշկագիտ-յան բաժին. ուսումնասիրում է հենաշարժ. համակարգի բնածին և ձեռքբերովի ձևախախտումներն ու ֆունկցիաների խանգարումները:

ՕՐԹՈՔԼՈՐԲԵՆԶԻԼԻԴԵՆՄԱԼՈՆԱԵՐԿՆԻՏՐԻԼ, $ClC_6H_4CH{=}C(CN)_2$, անգույն բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 95°C: Գրգռող ազդեցության թունավոր նյութ է: ԹՄԿ 0,005 *մգ/դմ*^{3} է՝ 1 *ր* տևողությամբ: Հայտնի է «Սի Էս» (CS) անվանումով:

ՕՐԻԲԱՍԻ, **Օրիբազի** (Oreibasios, մոտ 325–մոտ 400/403), հույն բժիշկ, Ալեքսանդրյան բժշկ. դպրոցի ներկայացուցիչ: Հռոմի կայսր Յուլիան Ուրացողի պալատ. բժիշկը, որի հանձնարարությամբ կազմել է բժշկ. գիտելիքների ամփոփագիր՝ Հիպոկրատից մինչև Գալենը («Սինոփսիս»)՝ 70 գրքով, որը համարվում է առաջին բժշկ. հանրագիտարանը Եվրոպայում:

«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», գիտագործն. իրավաբ. հանդես (1997–ից, Երևան): ՀՀ գլխ. դատախազության հրտ-յուն: Գլխ. խմբ-ներ՝ Գուրգեն Ամբարյան, Թամարա Շաքարյան (2014–ից):

ՕՐԻՆՈԿՈ (Orinoco), գետ Վենեսուելայում և Կոլումբիայում: Երկ.՝ 2730 *կմ*, ավազանը՝ ավելի քան 1 մլն *կմ*^{2}, ջրի միջին ծախսը՝ շուրջ 29 հզ. *մ*^{3}/*վ*: Սկսվում է Գվիանական սարահարթի հվ-արմ-ից և թափվում Ատլանտ. օվկ-ը: Վերին հոսանքում Օ-ից բաժանվում է Կասիկյարե գետը: Ծով. մակընթացությունը տարածվում է գետաբերանից 400 *կմ*: Գործում է ջրէկների կասկադ: Ափին են Պուերտո Այակուչո, Սյուդադ Բոլիվար, Սյուդադ Գուայանա (Վենեսուելա), Պուերտո Կարենյո (Կոլումբիա) քաղ-ները:

ՕՐԻՈՆ (Orion), հսկա որսորդ հուն. դից-յան մեջ: Առավել տարածված առասպելներից մեկի համաձայն՝ Օ-ին *Զևսը* վերածել է համաստեղության:

ՕՐԻՈՆ, Հայկ, հասարակած. համաստեղություն՝ Ցուլ, Երկվորյակներ, Միաեղջյուր, Նապաստակ, Էրիդան համաստեղությունների միջև: Ամենապայծառ աստղերը 0,1 (Ռիգել), 0,3 – 1,2 (Բետելգեյզե), 1,6 (Բելլատրիքս) *ա. մ.* են: Օ-ի 3 աստղերը (δ, ε, ζ., մոտ 2 ա. մ.) կազմում են Օ-ի գոտին, որին հայերն անվանել են Շամփուրը Հայկի, Քար ու կշեռք, Փոցխ ևն: Օ-ում է անզեն աչքով տեսանելի Մեծ միգամածությունը (գազափոշային ամենախոշոր ամպերից), որն ամենամոտն է Արեգակին (300 *պս*):

Օ. երևում է ՀՀ տարածքից:

«ՕՐԻՈՆ», արտամթն. աստղաֆիզ. աստղադիտակներ՝ պատրաստված ՀՀ ԳԱԱ Գառնիի տիեզ. աստղագիտ-յան լաբորատորիայում՝ Գ. Գուրզադյանի ղեկավարությամբ: «Օ–1» և «Օ–2» աստղադիտակները տեղադրվել են խորհրդ. «Սալյուտ–1» ավտոմատ (1971) և «Սոյուզ–13» օդաչուավոր (1973) տիեզերանավերի վրա: Նկարահանումներ են կատարել բաց երկնքում, գրանցել մի քանի հզ. կարճալիք աստղերի սպեկտրներ:

ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑՆԵՐ, կանանց կրթության և դաստիարակության ուս. հաստատություններ: Առաջին տարրական Օ. դ. բացվել են Գերմանիայում (XVI դ.), Ֆրանսիայում (XVII դ.), Անգլիայում, ԱՄՆ-ում (XVIII դ.), իգական առաջին գիմնազիաները՝ XVII դ–ի վերջին և XVIII դ–ի սկզբին (Ֆրանսիա, Գերմանիա, Ռուսաստան): XIX դ–ի 2–րդ կեսին հիմնադրվել են իգական առաջին բարձրագույն դպրոցները (Գերմանիա, Շվեյցարիա, 1867, Անգլիա, 1869, ԱՄՆ, 1871, Նորվեգիա, 1884, ևն):

Հայ իրականության մեջ VIII դ–ում ***Սահակադուխտն*** ունեցել է սանուհիներ, որոնց սովորեցրել է գրագիտ-յուն, երաժշտ. արվ.: XIX դ–ի սկզբին ազնվական օրիորդների և պաշտոնյաների դուստրերի համար հիմնադրվել են մասնավոր պանսիոններ, պետ. դպրոցներ (Կ. Պոլիս, 1821, 1844, Թիֆլիս, 1830, 1841, Երևան, 1850, Զմյուռնիա, 1838, ևն): 1860–70-ական թթ–ից հայտնի են Մարիամ Ղուկասյան (Շուշի), Գայանյան (Երևան, Թիֆլիս), Հոիփսիմյան (Բաքու, Նոր Բայազետ, Վաղարշապատ), Եղիսաբեյան (Ախալցխա), Սանդուխտյան-Մարիամյան (Վան), Արղության (Ալեքսանդրապոլ), Հայկանուշյան (Այնթապ), Դպրոցասեր տիկնանց (Կ. Պոլիս) և այլ Օ. դ.: XIX դ–ի վերջից հայ կանայք բարձրագույն կրթություն են ստացել Պետերբուրգի, Թիֆլիսի կանանց

բարձրագույն դասընթացներում, եվրոպ. համալսարաններում և ինստ-ներում:

ՕՐԻՍԱԲԱ (Orizaba), գործող հրաբուխ Մեքսիկայում, երկրի ամենաբարձր կետը (5610 *մ*): Վերջին անգամ ժայթքել է 1846-ին: Գտնվում է Պիկո դե Օրիսաբա ազգ. պարկում:

ՕՐԻՔՍ (Oryx gazella), **քարայծացուլ**, սնամեջ եղջերավորների ընտանիքի կաթնասուն կենդանի: Մարմնի երկ.՝ մինչև 2,4 *մ*: Երկար (երբեմն՝ 1 *մ*-ից ավելի) եղջյուրները բնորոշ են 2 սեռին: Մի քանի ենթատեսակ (երբեմն դիտում են որպես ինքնուրույն տեսակներ) ապրում է Աֆրիկայի և Առաջավոր Ասիայի տափաստաններում և անապատներում: Ընտանեցման և կլիմայավարժեցման կենդանիներ են: Գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՕՐԻԽԻՏ, տես *Ամորձաթորթ*:

ՕՐԿՆԵՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ (Orkney Islands), կղզեխումբ Շոտլանդիայի հս-ում (Մեծ Բրիտանիա): Կազմված է շուրջ 70 կղզիներից՝ մոտ 1000 *կմ*^{2} ընդհ. տարածքով, բն.՝ 21,4 հզ. (2011): Բարձր.՝ մինչև 477 *մ*: Գլխ. ք-ր՝ Կերկուոլ:

ՕՐՀՆԵՐԳ, պետ. խորհրդանիշներից: ՀՀ Օ.՝ «Մեր հայրենիքը» (Հայաստանի 1-ին հանրապետության Օ.), ընդունել է ՀՀ ԳԽ 1991-ին: Տեքստը Մ. Նալբանդյանի փոխադրած (1854) «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունն է (մասամբ՝ փոփոխված), մեղեդին՝ ժող.: Բազմաձայնել է Ք. Կարա-Մուրզան, վերադաշնակել և նոտագրել է (1919) Բ. Կանաչյանը: ՀԽՍՀ Օ-ի տեքստի հեղինակը Սարմենն է, երաժշտությանը՝ Ա. Խաչատրյանը:

ՕՐՀՈՒՍ (Arhus), ք-նվինգստ Դանիայում, Յուտլանդիա թերակղզու արմ-ում, համանուն ամտի վարչ. կենտրոնը: Բն.՝ 229 հզ. (2010): Ունի համալսարան: Կան XIII–XV դդ-ի. ճարտ. հուշարձաններ: 1-ին անգամ հիշատակվել է 948-ին:

ՕՐՄԱՆՅԱՆ Մաղաքիա (ավագանի անունը՝ Պողոս, 1841–1918), աստվածաբան, պատմաբան, բանասեր, հրապարակախոս: Կ. Պոլսի հայոց պատրիարք՝ 1896–1907-ին: 1889–96-ին Արմաշի վանքի վանահայրն էր և իր հիմնադրած դպրեվանքի տեսուչը: Պատրիարքության ընթացքում եղել է Ամենայն հայոց կաթողիկոսի հուսալի հենարանն ու գործակիցը՝ 1903-ի եկեղեց. գույքի բռնագրավման, ինչպես նաև Կիլիկիո աթոռի և Սբ Էջմիածնի իրավասությունների վերաբերյալ խնդիրներում:

Օ. ժամանակի ամենանշանավոր և բազմարդյուն հայ գիտնական հոգևորականներից է: Հիմն. աշխ-ներից են «Ծիսական բառարանը» (1957), «Հայոց եկեղեցին եւ իւր պատմութիւնը...» (1911), «Համապատում: Չորս Աւետարանների պարունակութիւնը...» (1911), «Ազգապատում» (մաս 1–4, 1912–27, 1959–61) և այլ երկեր:

ՕՐՅՈԼ, ք. ՌԴ-ում, համանուն մարզի վարչ. կենտրոնն Օկա գետի ափին: Բն.՝ 319,1 հզ. (2009): Երկթղ. հանգույց է:

ՕՐՅՈԼԻ ՄԱՐԶ, վտմ ՌԴ Կենտր. դաշն. օկրուգում: Տարածքը՝ 24,7 հզ. *կմ*^{2}, բն.՝ 816,9 հզ. (2009): Ունի 24 շրջան, 7 քաղաք, 13 քտա: Վարչ. կենտրոնը՝ *Օրյոլ:* Կազմավորվել է 1937-ին:

ՕՐՆԻԹԻՆ, $NH_2(CH_2)_3CH(NH_2)COOH$, ալիֆատիկ ամինաթթու: Օրգանիզմում գոյությունն ունի ազատ վիճակում, պարունակվում է որոշ հակաբիոտիկներում, սպիտակուցներում հայտնաբերված չէ: Մասնակցում է միզանյութի կենսասինթեզին, որը հայտնի է որպես Օրնիթինային ցիկլ:

ՕՐՈՋԻՈՍ (Orosius, մոտ 385–մոտ 420), հռոմեացի պատմագիր, քահանա: «7 գրքով պատմություն հեթանոսների դեմ» երկը գրել է Ավգուստինոսի ցուցմունքով, ապացուցելու, որ քրիստոնեությունը մարդկության համար եղել է փրկություն:

ՕՐՈՃ (Genista), **դեղնածաղիկ**, բակլազգիների (թիթեռնածաղկավորներ) ընտանիքի տերևաթափ կամ կիսամշտադալար թփերի կամ կիսաթփերի ցեղ: Հայտնի է 70 տեսակ (Միջերկրածովայքում, Կովկասում), ՀՀ-ում՝ 2՝ Սյունիքի մարզում: Ներկատու և գեղազարդիչ բույս է:

ՕՐՈՄՈ (ինացած՝ գալլա), արլ. քաշիրների խմբի ժողդ Եթովպիայում՝ 2-րդը՝ քանակով՝ 25,5 մլն (2007): Ապրում են նաև Սոմալիում (50 հզ.), Սուդանում (80 հզ.) և Քենիայում (320 հզ.): Խոսում են *օրոմա լեզվով*: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են, կան նաև քրիստոնյաներ:

ՕՐՈՄՈ ԼԵԶՈՒ (ինացած՝ գալլա լեզու), աֆրոասիական լեզուների քաշիրյան ընտանիքի լեզու: Ներկայացված է իրարից զգալիորեն տարբերվող խոսվածքներով և բարբառներով, որոնք երբեմն դասակարգվում են որպես ինքնուրույն լեզու: Եթովպիայում գրի հիմքում եթովպ. այբուբենն է:

ՕՐՈՍԿՈ (Orozco) Խոսե Կլեմենտե (1883–1949), մեքսիկացի գեղանկարիչ: Մոնումենտալ գեղանկարչության մեքսիկ. դպրոցի ներկայացուցիչ: Օ-ի որմնանկարները (Մեխիկո, Գվադալահարա, ԱՄՆ) առանձնանում են ցայտուն արտահայտչականությամբ, կերպարների գրոտեսկով, գույների հակադրությամբ:

ՕՐՈՏԱԹԹՈՒՐ, **ուրացիլ**՝ պիրիմիդինային հիմքի ածանցյալ: Պարունակվում է բոլոր կենդանի բջիջներում, մասնակցում է պիրիմիդինային նուկլեոտիդների կենսասինթեզին: Կարգավորում է բույսերի և կենդանիների աճը: Կիրառվում է բժշկության մեջ սպիտակուց. փոխանակության խանգարումների ժամանակ:

ՕՐՈՐՈՅԱՅԻՆ ԵՐԳ, 1. **օրոր**, **օրորերգ**, **հայրուր** ևն, երգում են մանկանը քնեցնելիս: Բանահյուսության ինագույն ժանրերից է: Հայկ. ժող. Օ. ե-երն առանձնանում են տեղային-ոճ. բնույթով: Լավագույն նմուշներից են Կոմիտասի գրառած Ակնա և Վաղարշապատի, Գ. Սյունու՝ Կարնո, Մ. Թումանճանի՝ Կարնո և Բութանիայի օրորները: 2. Հիմնականում՝ քնար. բնույթի վոկալ կամ գործիք. պիես (Կոմիտաս, Գ. Սյունի, Բ. Կանաչյան, Ա. Սպենդիարյան, Ա. Հարությունյան և ուր.):

ՕՐՋՈՆԻԿԻՁԵ Գրիգորի Կոնստանտինովիչ (Սերգո, 1886–1937), խորհրդ. կուս. և պետ. գործիչ: Հոկտ. հեղ-յան մասնակից (Պետրոգրադ): 1919–20-ին մի շարք բանակների ՌՀԽ անդամ: 1920-ից՝ ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Կովկաս. բյուրոյի նախագահ: 1922–26-ին՝ Անդրկովկաս. և Հս-կովկաս. կուս-յան երկրկոմների 1-ին քարտուղար: 1926–30-ին՝ Համկ(բ)Կ ԿՎՀ նախագահ և ԽՍՀՄ բանգյուղտեսչության ժողկոմ, միաժամանակ՝ ԽՍՀՄ ԺԿԻՖ-ի և Աշխ-ի պաշտպ-յան խորհրդի նախագահի տեղակալ: 1930-ից՝ Համամիութ. ԺՏԲԽ-ի նախագահ: 1932-ից՝ ԽՍՀՄ ծանր արդ-յան ժողկոմ: Ինքնասպան է եղել զանգված. բռնաճնշումների պայմաններում:

«ՕՐՐԱՆ», բարեգործ. ՀԿ: Հիմնադրվել է 2000-ին Երևանում՝ Արմինե և Բաֆֆի *Հովհաննիսյանների* ջանքերով: Նպատակն անապաստան երեխաներին օգնելն է՝ ներառելով կրթ., մշակութ., հոգեբ., բժշկ., սոցիալ. ծառայությունների մեջ, նրանց ընդունակությունները բացահայտելն ու զարգացնելը, սոցիալ. ճգնաժամի մեջ հայտնված ընտանիքներին, միայնակ ու անօգնական ծերերին աջակցելը: Ունի ձեռարվ-ի կենտրոն, մասնաճյուղ՝ Վանաձորում:

ՕՐՈՒԵԼ (Orwell) Ջորջ (Բլեր Էրիկ Արթուր, 1903–1950), անգլիացի գրող, հրապարակախոս: Հեղինակ է «Անասնաբակ» (1945, հայ.՝ 1984, «Անասնաֆերմա», հայ.՝ 2013) երգիծ. վիպակի, որտեղ բացահայտել է հեղ. սկզբունքների և գաղափարների հիման վրա առաջացած հաս-յան վերածումը ամբողջատիր. ռեժիմի, «1984» (1949, հայ.՝ 2012) հակաուտոպիական վեպի, նաև ինքնակենսագր. երկերի:

ՕՐՓԵՈՍ, փոյուգիացի երգիչ հուն. դից-յան մեջ: *Կալիոպե* մուսայի որդին: Հրաշալի երգեցողությամբ հիացրել է աստվածներին և մարդկանց, սանձել բնության վայրի ուժերը: Օ-ի՝ որպես արգոնավորդների ճանապարհորդության մասնակցի, երաժշտության հնարողի, իր սիրելիի՝ Էվրիդիկեայի հետևից Հադեսի թագավորություն իջած հավատարիմ սիրահարի մասին առասպելներն արտահայտվել են գրկ-յան ու երաժշտության մեջ, կիրառ. արվ-ում, երաժշտության մեջ:

ՕՑԵԼՈՏ (Leopardus pardalis), *կատուներ* ցեղի կաթնասուն կենդանի: Մարմնի երկ.՝ 1 *մ*, պոչինը՝ մոտ 30 *սմ*: Ապրում է Ամերիկայի անտառներում (ԱՄՆ-ի հվ-ից մինչև Պատագոնիա): Երկրների մեծ մասում անհետացման վտանգի տակ է. գրանցված է ԲՊՄՄ Կարմիր գրքում:

ՕՑՈՒ, ք. Շապոնիայի Հոնսյու կղզում՝ Բիվա լճի ափին, Սիգա պրեֆեկտուրայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 333,8 հզ. (2010): Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՕՈՒԵՆ (Owen) Ռիչարդ (1804–1892), անգլիացի կենդանաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1839): Աշխ-ները վերաբերում են բրածո կենդանիների ձևաբանությանը և կարգաբանությանը: Առաջինն է (1863) նկարագրել արքեոպտերիքսի (յուրայի դարաշրջանի հնագույն անհետացած թռչունի) կմախքը:

ՕՈՒԵՆ Ռոբերտ (1771–1858), անգլիացի ուտոպիստ-սոցիալիստ: 1810-ական թթ-ի սկզբին մշակել է բանվորների կյանքի պայմանների բարելավման պլան և ձգտել իրագործել այն: 1817-ին առաջարկել է մասնավոր սեփականությունից, դասակարգերից, շահագործումից զուրկ, ինքնակառավարվող «հանրության համագործակցության բնակավայրերի» ստեղծման ուղիով հաս-յան արմատ. վերակազմակերպման պլան: ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում Օ-ի հիմնադրած փորձնա. համայնավար. գաղութներն անհաջողության են մատնվել:

ՕՈՒԹՍ (Oates) Ջոյս Քերոլ (ծ. 1938), ամերիկացի կին գրող, դրամատուրգ, քննադատ: Ճանաչվել է 1960-ական թթ-ի ամերիկ. առաջատար վիպագիր: Հեղինակ է «Երկրային ուրախությունների այգին» (1967), «Նրանց կյանքից» (1969), «Հրաշքների աշխարհ» (1971), «Լույսի հրեշտակը» (1981) սոցիալ.-հոգեբ., «Բելֆլյոր» (1980), փորձառար. «Ուինթերոնի գաղտնիքները» (1984), «Խարտյաշ կինը» (2000) և այլ վեպերի, պատմվածքների ժող-ների, նաև պիեսների, բանաստեղծությունների, էսսեների:

Օ’ՔԵԼԼԻ (O’Ceallaigh, O’Kelly) Շոն Թոմաս (1882–1966), Իռլանդիայի նախագահ՝ 1945–59-ին: Շինֆեյներների շարժման, Իռլանդ. ապստամբության (1916) մասնակից:

Օ’ՔԵՅՍԻ (O’Casey) Շոն (1880–1964), իռլանդացի գրող: Հեղինակ է «Հրաձիգի ստվերը» (1925), «Յունոնան և սիրամարգը» (1925), «Գութան և աստղեր» (1926 դրամատիկ եռերգության, «Աստղը կարմրում է» (1940) հերոս. դրամայի, «Իմ տան հայելին» (հ. 1–6, 1939–54) ինքնակենսագր. էպոպեայի, գեղագիտ-յանը վերաբերող հոդվածների:

ՕՔԼԵՆԴ (Auckland), ք-նվինգստ Նոր Զելանդիայի Հս. կղզում: Բն.՝ 421,9 հզ. (արվարձաններով՝ 1,4 մլն, 2010): Օ-ում է արտադրվում երկրի արդ. արտադրանքի շուրջ 1/3-ը: Գործում է Մելանեզիական միսիոներ. թանգարանը:

ՕՔԼԵՆԴ (Oakland), ք. ԱՄՆ-ում, Սան Ֆրանցիսկոյի արվարձանը: Բն.՝ 391 հզ. (2010): Խաղաղօվկիանոս. ափի խոշորագույն ծով. նվինգստ-ներից է (տարեկան շուրջ 2 մլն բեռնարկղ, 2009):

ՕՔՀԱՄ (Ockham, Occam) Ուիլյամ (մոտ 1285–1349), անգլիացի սխոլաստիկ փիլ., տրամաբան, եկեղեց-քաղ. գրող: Նոմինալիզմի ականավոր ներկայացուցիչ (XIV դ.), ֆրանցիսկյան: Ըստ Օ-ի սկզբունքի՝ այն հասկացությունները, որոնք չեն հանգեցվում ինտուիտիվ կամ փորձնական գիտելիքին, պետք է հեռացվեն գիտ-յունից («Օքամի ածելի»): XIV–XV դդ-ում օքամականությունը լայնորեն տարածվել է եվրոպ. ինստ-ներում:

ՕՔՍԻԳԵՆԱՉԵՐ, օքսիդոռեդուկտազների խմբի ֆերմենտներ, կատալիզում են 2 ատոմ թթվածնի միացումը հիմնանյութի մոլ-ին: Բույսերի սերմերում պարունակվող երկօքսիգենազը պայմանավորում է ալյուրի և ձավարեղենի դառնահամությունը:

ՕՔՍԻԳԵՆՈԹԵՐԱՊԻԱ, տես *Թթվածնաթուժություն*:

ՕՔՍԻԴԱԶՆԵՐ, օքսիդոռեդուկտազների խմբի ֆերմենտներ. կատալիզում են կենդանի բջիջներում ընթացող ***օքսիդավերականգնման ռեակցիաները***:

ՕՔՍԻԴԱՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ, փոխազդող նյութերի բաղադրության մեջ մտնող ատոմների օքսիդացման աստիճանների փոփոխությամբ ուղեկցվող քիմ. ռեակցաներ, օր.՝

+5 +4 –1 +6

$HClO_3 + 3H_2SO_3 \rightarrow HCl + 3H_2SO_4$

Նյութը, որում նվազում է ատոմի օքսիդացման աստիճանը, այսինքն՝ այն ստանում է էլեկտրոններ (Cl-ը $HClO_3$-ում), կոչվում է օքսիդիչ, իսկ եթե մեծանում է օքսիդացման աստիճանը, այսինքն՝ այն կորցնում է էլեկտրոններ (S-ը H_2SO_3-ում), կոչվում է վերականգնիչ: Մոլ-ում ատոմի օքսիդացման աստիճանի նվազումը կոչվում է վերականգնում, իսկ մեծացումը՝ օքսիդացում:

ՕՔՍԻԴԱՑՄԱՆ ԱՍՏԻՃԱՆ, օքսիդացման թիվ, միացության մեջ ատոմը բնութագրող պայման. լիցք: Իոնական կապով մոլ-ներում համընկնում է իոնի լիցքի հետ, օր.՝ NaCl-ում նատրիումի Օ. ա. +1 է, քլորինը՝ –1: Կովալենտ կապով միացություններում Օ. ա. համարվում է այն լիցքը, որը կստանար ատոմը, եթե կապն առաջացնող բոլոր էլեկտրոնները ամբողջությամբ անցնեին առավել էլեկտրաբացասական ատոմներին, օր.՝ HCl-ում ջրածնի Օ. ա. +1 է, քլորինը՝ –1: Կիրառվում է ***օքսիդավերականգնման ռեակցիաներ*** կազմելիս:

ՕՔՍԻԴԱՑՈՒՄԱՅԻՆ ՖՈՍՖՈՐԻԼԱՑՈՒՄ (կենսաքիմ.), ադենոզինեռֆոսֆորական թթվի առաջացումը ադենոզինեկֆոսֆորական և ֆոսֆորական թթուներից՝ կենդանի բջիջներում ընթացող օրգ. նյութերի օքսիդացման ժամանակ անջատված էներգիայի հաշվին:

ՕՔՍԻԴՆԵՐ, քիմ. տարրերի միացությունները թթվածնի հետ: Տարբերում են աղ առաջացնող և աղ չառաջացնող (օր.՝ NO, CO) Օ.: Աղ առաջացնող Օ. լինում են հիմնային (CaO), թթվային (SO_3) և երկդիմի (ZnO), որոնց հիդրատներն են, համապատասխանաբար, հիմքերը, թթուները և երկդիմի հիդրօքսիդները:

ՕՔՍԻԹԹՈՒՆԵՐ, հիդրօքսիթթուներ, մոլ-ում պարունակում են կարբօքսիլ՝ COOH, և հիդրօքսիլ՝ OH, խմբեր, օր.՝ $HOCH_2COOH$՝ գլիկոլաթթու: Պարունակվում են բուս. և կենդ. օրգանիզմներում (կաթնաթթու, լիմոնաթթու, գինեթթու ևն):

ՕՔՍԻԼԻԶԻՆ, 5-հիդրօքսիլիզին, ալիֆատիկ ամինաթթու՝ $H_2NCH_2CH(OH)(CH_2)_2CH(NH_2)COOH$՝ մտնում է որոշ ֆիբրիլային սպիտակուցների (կոլագենի, ժելատինի), ինչպես նաև շիճուկ. ***ալֆա***- և ***գամմա***-գլոբուլինների բաղադրության մեջ: Պարունակվում է որոշ բակտերիաների ֆոսֆատիդներում:

ՕՔՍԻՀԵՄՈԳԼՈԲԻՆ, թթվածնի հետ միացած ***հեմոգլոբին***, որը շնչառ. օրգաններից թթվածինը տեղափոխում է հյուսվածքներ, պայմանավորում է զարկերակ. արյան ալ կարմիր գույնը:

ՕՔՍԻՌԵԴՈՒԿՏԱԶՆԵՐ, ֆերմենտների դաս. կատալիզում են ***օքսիդավերականգնման ռեակցիաները***: Կարևոր նշանակություն ունեն բջիջներն էներգիայով ապահովվելու գործում: Օ-ի կարևոր խմբերն են դեհիդրոգենազները, հիդրօքսիլազները, օքսիգենազները, օքսիդազները, պերօքսիդազները:

ՕՔՍԻՏՈՑԻՆ, օցիտոցին, մարդու և կենդանիների նյարդահորմոն. արտադրվում է ենթատեսաթմբում (հիպոթալամուս), անցնում է հիպոֆիզ, այնուհետև՝ արյան մեջ: Առաջացնում է արգանդի, նաև կաթնագեղձերի հարթ մկանների կծկումներ:

ՕՔՍՖՈՐԴ (Oxford), ք. Մեծ Բրիտանիայում (Անգլիա), Թեմզա գետի ափին, Օքսֆորդշիր կոմսության վարչ. կենտրոնը: Բն.՝ 146,7 հզ. (2010): Ունի համալսարան (հիմնադրվել է XII դ-ում): 1-ին անգամ հիշատակվել է 912-ին: Կան ուշ ռոման., ռոման. և գոթ. ոճի եկեղեցիներ (XII–XV դդ.), դասական, նոր գոթ. ոճերի համալսարան. քոլեջների համալիրներ (XIV–XIX դդ.) ևն:

ՕՔՍՖՈՐԴԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Մեծ Բրիտանիայի և աշխարհի հնագույն համալսարաններից: Հիմնադրվել է XII դ-ի 2-րդ կեսին (այլ տվյալներով՝ XIII դ-ի սկզբին): Միջնադարում Օ. հ-ում դասավանդել են Ռ. Բեկոնը, Իոհան Դունս Սքոթը, Ջ. Ուիկլիֆը, վերածնության շրջանում՝ Էրազմ Ռոտերդամցին, Թ. Մորը, XVII դ-ում՝ Ջ. Լոկը, Ս. Սմիթը, Ռ. Բոյլը, XVII դ-ում՝ Է. Հալլեյը և ուր.: Օ. հ-ի կազմում են 38 քոլեջ, մի շարք մասնագիտացված ԳՀԻ-ներ և լաբորատորիաներ, Բոդլեյան համալսարան. խոշորագույն գրադարանը (հիմն.՝ 1602, ունի հայկ. ձեռագրերի, տպագիր գրկ-յան, հայ. մշակույթի գանձերի հարուստ հավաքածու, պարբերաբար կազմակերպվում են ցուցադրություններ), թանգարաններ ևն: 2015-ին ուներ ավելի քան 20 հզ. ուսանող:

ՕՔՐՈՅԱՆ Օքրո Մկրտչի (1939–2003), գրող, գրականագետ: Բանասիր. գիտ. թեկնածու (1998): Հեղինակ է «Հանդիպում ուղեծրում» (1983), «Շուշանաց հովիտը» (1986), «Աստված սեր է» (հ. 1–4, 1958–2004) բանաստեղծությունների ժող-ների, «Լեռան զանգեր» (1996) վեպի: Երևանում Օ-ի անունով կոչվել է գրադարան (2004), ստեղծվել հիմնադրամ (2007),:

ՕՔՐՈՅԱՆՑ Դավիթ Գրիգորի (1874–1943), նկարիչ: Հրատարակել և նկարազարդել է «Սափրիչ» (1906–07, Ս. Պետերբուրգ) ամսագիրը: 1921-ին Օդեսայում հիմնադրել է «Գեղարվեստից ակադեմիա», եղել ռեկտորը: Հեղինակ է «Սահակ կաթողիկոսի վերջին կամքը» (1909), «Պատմող Արինան», «Ինքնանկար» (1912) գործերի, նաև Ս. Դեմուրյանի (1901), Ռ. Մելիքյանի (1913) դիմանկարների (բոլորը՝ ՀԱՊ-ում):

Օ’ՖԱՈԼԵՅՆ (O’Faolain) Շոն (Ջոն Ֆրենսիս Ուիլեն, 1900–1991), իռլանդացի գրող: Հեղինակ է «Հասարակ մարդկանց օջախը» (1933) վեպ-տարեգրության, «Եվ նորից» (1979) փիլ. վեպի, «Շոն Օ’Ֆաոլեյնի լավագույն պատմվածքները» (1957), «Ես հիշում եմ, հիշում եմ» (1961), «Խոսող ծառեր» (1970) պատմվածքների ժող-ների, նաև վիպականացված կենսագր. և «Կեցցեմ ես» (1964) ինքնակենսագր. երկերի, գրականագիտ. աշխ-ների:

ՕՖԹԱԼՄԻԱ (հուն.՝ ophthalmia), աչքի որոշ բորբոք. հիվանդությունների ընդհ. անվանումը:

ՕՖԹԱԼՄՈ... (հուն.՝ ophthalmos – աչք), բարդ բառերի մաս. ցույց է տալիս աչքին, աչքի հիվանդություններին վերաբերելը:

ՕՖԹԱԼՄՈԼՈԳԻԱ, տես *Աչապատություն*:

ՕՖԹԱԼՄՈՊԼԵԳԻԱ (< *օֆթալմո*... և հուն.՝ plege – հարված, ախտահարում), աչքի բոլոր կամ մի քանի մկանների լուծանք՝ պայմանավորված գլխուղեղի հիվանդությունների, թունավորումների, ինքնաթունավորումների, վարակիչ հիվանդությունների ժամանակ ակնաշարժ նյարդերի ախտահարմամբ:

ՕՖՇՈՐ (անգլ.՝ off-shore – ափից, երկրի տարածքից հեռու), տարածք, որին արտոնյալ ռեժիմ է տրամադրվում (հարկերի նվազեցում, արժութ. վերահսկողությունից ազատում ևն) օտարերկրյա մասնակիցներով և օտարերկրյա արժույթով ֆինանսավարկ. գործառնությունների համար:

ՕՖՈՐՏ (ֆրանս.՝ eou-forte – բառացի՝ թունդ ջուր, այժմ՝ ազոտական թթու), մետաղափորագրության եղանակներից: Զևավորվել է XVI դ-ում, հաջորդել հատիչային փորագրությանը: Խազագծված պատկերը խածատվում է և փորագրվում թթվով մետաղի լաքապատ մակերևույթին: Օ-ի տարատեսակներ են աքվատինտան, փափուկ լաքը, լավիսը ևն: Օ-ի մեծ վարպետ էր Ա. Դյուրերը: Հայ նկարիչներից հայտնի են Էդգար Շահինի, Տիգրան Պոլադի, Ժանսեմի, Մհեր Աբեղյանի, Հրաչյա Ռուխկյանի և ուր. Օ-ները:

ՕՖՖԵՆԲԱԽ (Offenbach) Ժակ (Յակոբ Էբերշտ, Eberscht, 1819–1880), ֆրանսիացի կոմպոզիտոր: Դաս. օպերետի հիմնադիրներից: 1855-ին Փարիզում հիմնադրել է «Բուֆֆ Պարիզիեն» թատրոնը (ղեկ.՝ մինչև 1862-ը): Հեղինակ է «Օրփեոսը դժոխքում» (1858), «Չքնաղ Հելինե» (1864), «Փարիզյան կյանք» (1866), «Պերիկոլա» (1868) և այլ օպերետների, «Հոֆմանի հեքիաթները» (1880) օպերայի:

Ֆ

Ֆ, հայ. այբուբենի 39-րդ տառը, անվանումը՝ ֆե: Ունի ***գրչագիր***, ***երկաթագիր***, ***բոլորգիր***, ***շղագիր***, ***նոտրգիր*** տառատեսակները: Հայ-ի հետնալեզվային շրթնայնացած վերին բարձրացման ձայնավոր ինչյուն (ինչույթ) է: Թվային արժեք չունի:

ՖԱ, եվրոպ. նոտագրության ինչյուններից, հիմն. դիատոնիկ դո մաժոր ինչյունաշարի IV աստիճանը: Նշվում է լատ. F տառով:

ՖԱԲԻՈՒՍ ՄԱՔՍԻՄՈՒՍ Կունկտատոր (Fabius Maximus Cunctator, բառացի՝ դանդաղկոտ, մ. թ. ա. 275–203), հռոմեացի զորահրամ.: 5 անգամ ընտրվել է հյուպատոս, 2 անգամ՝ դիկտատոր: 2-րդ պունիկյան պատերազմի (217) ժամանակ խուսափելով վճռական ճակատամարտերից՝ կիրառել է Հաննիբալի բանակն աստիճանաբար հյուծելու ռազմավար. հնարք:

ՖԱԲՐ (Fabre) Անրի (1882–1984), ֆրանսիացի ճարտարագետ: Աշխարհում առաջին հիդրոինքնաթիռի ստեղծողը, որով 28.03.1910-ին կատարել է 500 *մ* երկ-յան թռիչք: 1911-ին երկպլանը ձևափոխել է ինքնաթիռ-երկկենցաղի (ամֆիբիա):

ՖԱԲՐ Ժան-Անրի (1823–1915), ֆրանսիացի միջատաբան: Ուսումնասիրել է միջատների, նաև սարդերի ու կարիճների կենսակերպն ու բնազդները: Նրա դասագրքերը և գիտահանրամատչելի աշխատները, այդ թվում՝ «Միջատաբանական հուշեր» (հ. 1–10, 1879–1907), վերաբերում են միջատների կենսբ-յանը:

ՖԱԲՐԻՋԻ (Fabrizi) Ալդո (1905–1990), իտալացի կինոդերասան, սցենարիստ, ռեժ.: Ճանաչվել է Դոն Պիետրոյի («Հռոմը՝ բաց քաղաք», 1945, ռեժ.՝ Ռ. Ռոսսելլինի) դերակատարմամբ, մարմնավորել դերեր կատակերգություններում և դրամաներում («Ոստիկաններ և գողեր», «Որդիս պրոֆեսոր է», «Պատրաստվել է Իտալիայում» ևն): «Տարագիրներ» (1949), «Գողացել են տրամվայ» (1955), «Մաեստրո» (1958) ֆիլմերի սցենարիստն ու ռեժ-ն է:

ՖԱԲՐԻՅԻՈ Աքվապենդենտացի (Fabrici d' Acquapendente) Ջերոլամո (1533/37–1619), իտալացի անատոմ: Ու. *Հարվեյի* ուսուցիչը: Նկարագրել է երակ. փականները, թռչունների կոյանցքի մակաձը (այսպես կոչված ֆաբրիցյան պարկ): Աշխ-ները վերաբերում են սաղմնաբանությանը, համեմատ. անատոմիային:

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ (Fabricius), գերմանացի աստղագետներ, հայր և որդի: **Դավիդ** Ֆ. (1564–1617), հայտնաբերել է 1-ին փոփոխ. աստղը՝ Կետի Միրը (1596): **Յոհաննես** Ֆ. (1587–մոտ 1615), Գ. Գալիլեյից և Կ. Շեյներից անկախ հայտնաբերել է արեգակնբծերը, նկարագրել դրանց տեղաշարժերն Արեգակի սկավառակի վրայով (1611):

ՖԱԲԲ-ՊԵՐՈՅԻ ԻՆՏԵՐՖԵՐՈՄԵՏՐ, բազմաճառագայթ ***ինտերֆերոմետր***: Կազմված է 2 հայելուց (ապակե կամ քվարցե), որոնց անդրադարձնող մակերևույթներն ուղղված են միմյանց: Մեծ լուծունակությամբ սպեկտր. սարք է: Օգտագործվում է նաև որպես բաց ռեզոնարար ԳՀՀ և օպտիկ. տիրույթներում:

ՖԱԲՈՒԼԱ (լատ.՝ fabula – շարադրանք, պատմություն), գեղ. երկի իրադարձությունների բնական ընթացքը, հաջորդականությունը, որի մասին պատմվում է սյուժեի մեջ: Գրողի մտահղացմանը համապատասխան՝ դեպքերի ընթացքը կարող է փոխվել և ներկայացվել շրջուն հերթականությամբ՝ խախտելով նրանց իրական կարգը, հետ ու առաջ դնել փաստերը: Այստեղից էլ առաջանում են Ֆ-ի և սյուժեի տարբերությունը:

...ՖԱԳ (հուն.՝ phagos – խժռող, լափող), բարդ բառերի մաս. իմաստով համապատասխանում է «կերակրվող», «կլանող» բառերին (օր.՝ ***բակտերիոֆագ***):

ՖԱԳԵՐ, տես *Բակտերիոֆագներ*:

ՖԱԳՈՏ (իտալ.՝ fagotto – կապ, հանգույց), փայտե փող. երկլեզվակավոր երաժշտ. գործիք (հիմնականում՝ նվագախմբային): Կառուցվածքով մոտ է ***հոբոյին***: Ստեղծվել է XVI դ-ի 1-ին կեսին Իտալիայում: Մենակատար գործիք է, ընդգրկվում է նաև նվագախմբերում և անսամբլներում: Բաս. տեսակը կոնտրֆագոտն է:

ՖԱԳՈՑԻՏՆԵՐ (< հուն. phagos – խժռող և ...*ցիտ*), մարդու և կենդանիների բջիջներ, որոնք օժտված են ***ֆագոցիտոզի*** ունակությամբ: Ֆ. են լեյկոցիտների որոշ տիպեր, ռեթիկուլոէնդոթել. համակարգի բջիջները ևն:

ՖԱԳՈՑԻՏՈԶ, միաբջիջ օրգանիզմների կամ ***ֆագոցիտների*** կողմից կենդանի բջիջների և մահացած մասնիկների ակտիվ բռնումն ու կլանումը: Օրգանիզմի պաշտպ. ռեակցիաներից է՝ հիմնականում բորբոքումների ժամանակ: Հայտնագործել է Ի. Ի. *Մեչնիկովը* 1882-ին:

ՖԱԴԵԵՎ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (1901–1956), ռուս գրող, հաս. գործիչ: 1926–32-ին՝ Ռուսաստանի պրոլետ. գրողների ընկերակցության ղեկ., 1939–44 և 1954–56-ին՝ ԽՍՀՄ ԳՄ գլխ. քարտուղար: Հեղինակ է «Ձախաջախում» (1927, հայ.՝ 1933, կինոնկար՝ 1931), «Վերջին Ուդեհեն» (մաս 1–4, 1929–40, անավարտ, հայ.՝ 1936), «Երիտասարդ գվարդիա» (1945, վերամշ.՝ 1951, հայ.՝ 1947, կինոնկար՝ 1948) վեպերի: Հայ. հրատարակվել են նաև «Մետելիցա» (1936), «Ինչպես զոհվեց Սերգեյ Լազոն» (1939) գործերը: Ինքնասպան է եղել: ԽՍՀՄ Պետ. մրց. (1946):

ՖԱԵՏՈՆ, **Փաետոն** (հուն.՝ Phaethon – «փայլող»), Արևի աստված *Հելիոսի* որդին հինհուն. դից-յան մեջ: Ըստ առասպելի՝ հորից թույլտվություն է ստացել վարելու նրա կառքը, բայց չի կարողացել պահել ձիերի սանձը: Ձիերը, դուրս գալով իրենց ճանապարհից, այրել են երկնքի մի շերտը: Զևսը, համաշխ. հրդեհը կանխելու համար, շանթահարել է Ֆ-ին և նետել Էրիդանոս գետը:

ՖԱԶ (հուն.՝ phazis – հայտնվել, ի հայտ գալ), թերմոդինամիկայում, տարասեռ համակարգի համասեռ մասը, որի բաղադրությունը նրա որևէ կետում նույնն է, թերմոդինամիկ. հատկությունները՝ միանման և մյուս մասերից (Ֆ-երից) սահմանազատված է բաժանման մակերևույթով:

ՖԱԶԱՅԻՆ ԱՆՑՈՒՄ, ֆազային փոխարկում, նյութի անցումը մի ***ֆազից*** մյուսը՝ արտաքին պայմանների (ջերմաստիճան., ճնշման, մագնիս. և էլ. դաշտեր) փոփոխման դեպքում: Տարբերում են 1-ին և 2-րդ կարգի Ֆ. ա-ներ: 1. **1-ին կարգի** Ֆ. ա., երբ նյութի խտությունը, թերմոդինամիկ. պոտենցիալները, ***էնտրոպիան*** փոխվում են թռիչքաձև, անջատվում կամ կլանվում է ֆազ. անցման ջերմություն. օր.՝ գոլորշիացումը, հալումը, պնդացումը, բյուրեղացումը, ինչպես նաև նյութի բազմաթիվ բազմաձև փոխարկումները: Միաբաղադրիչ համակարգում հավասարակշռված Ֆ. ա-ման ջերմաստիճանի կախումը ճնշումից (1-ին կարգի Ֆ. ա-ման կոր) արտահայտվում է ***Կլապեյրոն-Կլաուզիուսի հավասարումով***: 2. **2-րդ կարգի** Ֆ. ա., երբ թռիչքաձև փոխվում են ***ջերմունակությունը, սեղմելիությունը,*** ֆազերի ընդարձակման ջերմ. գործակիցը, օր.՝ He-ի անցումը գերհոսունության վիճակի, Fe-ի անցումը ֆեռոմագնիս. վիճակից պարամագնիս. վիճակի ***Կյուրիի կետում***:

ՖԱԶԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆ, թերմոդինամիկ. հավասարակշռված ֆազերի միաժամանակյա գոյությունը բազմաֆազ համակարգում (պատկերվում է ֆազ. դիագրամով): Հավասարակշռության պայմաններում մասնիկների՝ մի ֆազից մյուսն անցնելու դեպքում համակարգի էներգիան չի փոխվում: Համակարգում միաժամանակ գոյություն ունեցող հավասարակշռված ֆազերի թիվը որոշվում է ***Գիբսի ֆազերի կանոնով***:

ՖԱԶԱՏՐՈՆ [< հուն. phasis – հայտնվել և (էլեկ)տրոն], **սինքրոցիկլոտրոն,** լիցքա-

վորված ծանր մասնիկների (պրոտոններ, դեյտրոններ ևն) պարբեր. ռեզոնանս. արագացուցիչ, որում կառավարող մագնիս. դաշտը, ըստ ժամանակի, հաստատուն է, իսկ արագացնող էլ. դաշտի հաճախությունը փոփոխվում է:

ՖԱԶԱՓՈԽԱԿԵՐՊԻՉ, սարքավորում, որը մուտքի էլ. ազդանշանը փոխակերպում է ըստ ֆազի իրար նկատմամբ 180°-ով շեղված 2 ազդանշանի: Կատարվում է էլեկտրոն. սարքերում: Կիրառվում է, օր., ռադիոտեխ. սարքավորումներում, չափիչ սարքերում:

ՖԱԶԻԼՈՎԱ Թուֆա Ֆազիլի (1917–1985), տաջիկ երգչուհի (սոպրանո), դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1957): 1934–48-ին՝ Տաջիկ. երաժշտ. թատրոնի, Տաջիկստանի ՕՔԹ (Գյուլիզար՝ Ս. Բալասանյանի «Վոսեի ապստամբությունը», Զոհրա՝ Ա. Ս. Լենսկու «Թահիր և Զոհրա», ևն), 1949-ից՝ Ա. Լահութիի անվ. դրամատիկ. թատրոնի մեներգչուհի: Տաջիկ. ԽՍՀ Պետ. մրց. (1978):

ՖԱԶԼՅԱՆ Պերճ Հայկի (1926–2016), դերասան, ռեժ.: 1959-ին հիմնադրել է Փափազյան թատերախումբը (ղեկ.՝ մինչև 1971-ը), 1963-ին՝ Լիբանանի արաբ. թատրոնը, 1971-ին՝ «Ազատ բեմ» սեփ. թատերախումբը: 1976-ից գործել է Մոնրեալում, հիմնադրել «Հայ բեմ» թատերախումբը: Բեմադրել է (նաև խաղացել) Տ. Պանյոլի «Տոպազ», Լ. Շանթի «Հին աստվածներ», Ն. Վ. Գոգոլի «Ամուսնություն», ՀՀ հեռուստաթատրոնում՝ «Քարիտեզճին» (ըստ Երուխանի «Զուկին փոխարեն» պատմվածքի, 1986) և այլ գործեր: Նկարահանվել է լիբանան. և եգիպտ. կինոյում («Մատանի վաճառողը», «Պահակի աղջիկը» ևն):

ՖԱԹԱԼԻ ԽԱՆ (1736–1789), Ղուբայի խանության կառավարիչ՝ 1758-ից: Ղուբայի շուրջն է միավորել Դերբենդի, Բաքվի, Շիրվանի և այլ խանություններ, մերձկասպյան հողերը՝ մինչև Արդաբիլ: Կողմնակից էր Ռուսաստանի հետ մերձեցմանը:

ՖԱԹԻՄՅԱՆՆԵՐ, արաբ խալիֆների հարստություն՝ 909–1171-ին: Իշխել են Հս. Աֆրիկայում, Արաբ. թ-կղզում, Ասորիքում: Անվանումն առաջացել է Մուհամմեդ մարգարեի դուստր Ֆաթիմայի անունից: Ֆ-ի խալիֆությունն իր հզորության շրջանում ներառել է Եգիպտոսը, Մաղրիբը, Պաղեստինն ու Սիրիան: Կործանել է վեզիր *Սալահ ադ-Դինը* և խլել իշխանությունը: Ունեցել են նաև հայազգի վեզիրներ՝ Բեդր էլ-Ջեմալի էլ-Արմանի (1073–94), ***Ա֊ֆդալ Շահնշահ*** (1094–1121), Արա ալ-Ահմադ, Յաէա ալ-Արմանի (1131–32), Բահրամ էլ-Արմանի (1135–37), Թուլայ իբն Ռուզիկ (1154–61), Ռուզիկ իբն Թուլայ (1161–63):

ՖԱԼԱԼԱԵՎ, Ֆեոդոր Յակովլևիչ (1899–1955), ԽՍՀՄ ավիացիայի մարշալ (1944): ՀՄՊ-ի ժամանակ՝ 1942-ից Կարմիր բանակի ՌՕՈՒ-ի փոխհրամ. և շտաբի պետ, 1946–50-ին՝ Ռազմաօդային ակադ-ի պետ:

ՖԱԼԼՈՄԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ (հուն. phallus–առնանդամ), առնանդամի՝ իբրև բնության բեղմնավորումն ու վերածնությունը խորհրդանշող ուժի պաշտամունքը հնագույն կրոններում: Առաջացել է մինչտոհմ. հասարակարգում, հետագայում տարածվել է Հին Հունաստանում, Հին Հռոմում, Արևելքի երկրներում:

Հայաստանի ուշ բրոնզի ու երկաթի դարաշրջանների (մ. թ. ա. II–I հզ-ամյակ) դամբարաններից հայտնաբերվել են տարբեր չափերի կոաձո ֆալլոսներ: Ֆ. Հայաստանում գոյատևել է մինչև քրիստոնեության մուտքը: Ֆ. դեռևս ընդունված է հինդուիզմում, սինտոիստ. և այլ կրոններում, Աֆրիկայի որոշ ժողղ-ների մեջ:

ՖԱԼԿ Ռոբերտ Ռաֆաիլովիչ (1886–1958), ռուս. գեղանկարիչ: Հեղինակ է նատյուրմորտների, բնանկարների, դիմանկարների («Կարմիր կահույք», 1920, «Ծովախորշ Բալակլավայում», 1927, «Ինքնանկար՝ կարմիր ֆեսով», 1957): Ֆ-ի «Նեգր» (1917), «Սև նատյուրմորտ» (1920), «Ծեր հայուհին: Փարիզ» (1930-ական թթ.) և այլ գործեր ՀՍՊ-ում են:

ՖԱԼԿԵՆՀԱՅՆ (Falkenhayn) Էրիխ ֆոն (1861–1922), գերմանացի զորահրամ., հետևազորի գեն. (1915): 1913–14-ին՝ Գերմանիայի ռազմ. նախարար, 1914–16-ին՝ ԳՇ պետ. հեռացվել է պաշտոնից Վերդենի մոտ կրած պարտության համար: 1916–18-ին Ռումինիայում՝ 9-րդ բանակի, Թուրքիայում՝ գերմանա-թուրք. զորքերի, Խորհրդ. Ռուսաստանում գերմ. ինտերվենցիայի տարիներին՝ 10-րդ բանակի հրամ.:

ՖԱԼԿՈՆԵ (Falconet) Էթիեն Մորիս (1716–1791), ֆրանսիացի քանդ.: Ստեղծել է ռոկոկոյի և վաղ կլասիցիզմի ոգով նրբագեղ կոմպոզիցիաներ («Պիգմալիոն», 1763), մոդելներ՝ Սևրի մանուֆակտուրայի ճենապակե արձանների համար, Պետրոս I-ի հուշարձանը («Պղնձե հեծյալը», 1766–78, Ս. Պետերբուրգ):

ՖԱԼՈՊՅԱՆ ՓՈՂԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ, ձվատարի բորբոքում, սալպինգիտ, վարակիչ հիվանդություն՝ պայմանավորված կնոջ ձվատար խողովակների միակողմանի կամ երկկողմանի բորբոքումով: Փոքր կոնքի առավել հանդիպող հիվանդություններից է: Առաջանում է արգանդի խոռոչի ախտածին միկրոֆլորայի տարածման կամ այլ օրգաններից՝ հեմատոգեն (արյունածին) ճանապարհով: Անվանումն ստացել է իտալացի բժիշկ Ֆալոպիա Գաբրիելեի (1523–1562) անունից, որն առաջինն է նկարագրել կնոջ ձվատարները:

ՖԱԿԻՐ (արաբ.՝ ունեզուրկ), 1. աղքատ, թափառաշրջիկ՝ միստիկ ***սուֆիականության*** մեջ: 2. Հնդկաստանում հաս. ծառա, աճպարար, վարժեցնող, հեքիմ (այս իմաստով հասկացությունը տարածվել է Եվրոպայում): 3. Լալեշի եզդիների բարձրագույն հոգևոր դասերից մեկի տիտղոսը:

ՖԱԿՏՈՐԻԱԼ n թվի, 1-ից մինչև տրված որևէ n բնական թվերի արտադրյալը՝ $1 \cdot 2 \cdot 3 \cdot \ldots n$, նշանակվում է n!: Օր.՝ $5! = 1 \cdot 2 \cdot 3 \cdot 4 \cdot 5 = 120$: Ըստ սահմանման՝ $0! = 0$:

ՖԱՀԴ իբն Աբդ ալ-Ազիզ աս-Սաուդ (1922–2005), Սաուդյան Արաբիայի թագավոր՝ 1982-ից:

ՖԱՀՐԱՏ (Գևորգյան Խաչատուր, 1867–1921), աշուղ: Երեք տարեկանում կուրացել է: Աշակերտել է ***Ֆիզահունն***: 1884-ին ստացել է վարպետի կոչում: Երգերում ներկայացրել է Րաֆֆու, Խ. Աբովյանի, Ծերենցի, Սուրացանի պատմավեպերը, հորինել հերոսապատում ասքեր:

ՖԱՁԱԵՎ Արսեն Սուլեյմանովիչ (ծ. 1962), ռուս. մարզիկ (ազատ ոճի ըմբշամարտ): ԽՍՀՄ ս. վ. վ. (1983): Օլիմպ. խաղերի (1988, 1992), աշխարհի (1983, 1985–87, 1991), Եվրոպայի (1984, 1985, 1987, 1988), ԽՍՀՄ (1983, 1986, 1987, 1989) չեմպիոն:

ՖԱՄ ՏՈՒԱՆ (ծ. 1947), վիետնամցի 1-ին տիեզերագնաց օդաչուն, գնդ.: Վիետնամի ԶՈՒ (1972), Աշխ. (1980), ԽՄ (1980) հերոս.: Թռել է տիեզերք՝ խորհրդ. «Սոյուզ–36, –37» տիեզերանավերով և «Սոլյուտ–6» տիեզերակայանով (Վ. Վ. *Գորբատկոյի* հետ, 1980-ի հուլիս): Լենինի շքանշան (1980):

ՖԱՄԱ (Fama) Յուջին (ծ. 1939), ամերիկացի տնտեսագետ: Աշխ-ները վերաբերում են ֆինանսների տեսությանը, արդյունավետ շուկայի հիպոթեզի սկզբունքներին: Նորելյան մրց. (2013, Լ. *Հանսենի* և Ռ. *Շիլլերի* հետ):

ՖԱՅԱՆՍ (Fajans) Կազիմիր (1887–1975), ամերիկացի ֆիզքիմիկոս: ՌԳԱ արտ. թղթ. անդամ (1924): Աշխ-ները վերաբերում են ճառագայթաքիմիային, լուծույթների տեսությանը, ադսորբմանը: Զևակերպել է (1913-ին՝ Ֆ. *Մոդդիի* հետ միաժամանակ) ճառագայթաակտիվ տարրերի տրոհման տեղաշարժման կանոնը: Հաստատել է (1913-ին՝ Ֆ. *Պանեթի* հետ) լուծույթներից ճառագայթաակտիվ տարրերի նստեցման կանոնը (Ֆ–Պանեթի կանոն):

ՖԱՅԵՐ Յուրի Ֆեոդորովիչ (1890–1971), ռուս. դիրիժոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1951): 1923–63-ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի բալետ. ներկայացումների դիրիժոր (Ա. Խաչատրյանի «Սպարտակ», Շ. Գունոյի «Ռոմեո և Ջուլիետ», ևն):

ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1946, 1947, 1950):

ՖԱՅՅՈՒՄՅԱՆ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ, հինեգիպտ. հոգեհանգստյան գեղանկարչ. դիմանկարներ (ծաղկել է I–III դդ-ում), հայտնաբերվել են 1887-ին Էլ Ֆայյում օազիսում (Եգիպտոս): Նկարել են տախտակի, վաղ շրջանում՝ նաև կտավի վրա՝ մոմանկարչության տեխնիկայով: Ֆ. դ-ին բնորոշ են վառ կենսալի, նաև պայման. կերպարներ, հյութեղ պլաստիկա, հարթ, գրաֆիկ. գծանկարչություն ևն:

ՖԱՅՆՇՅՄԵՐ Ալեքսանդր Միխայլովիչ (1905/06–1982), ռուս. կինոռեժ. (ծագումով՝ հրեա): ԲԽՍՀ (1935) և Լիտվ. ԽՍՀ (1954) արվ. վաստ. գործիչ: Նկարահանել է «Պորուչիկ Կիժեն» (1934), «Կոտովսկի» (1943), «Կոնստանտին Զասլոնով» (1949, Վ. Վ. Կորշ-Սաբլինի հետ), «Բոռ» (1955), «Հեռավոր Արևմուտքում» (1969), «Պանդոկ Պյատնիցկայայի վրա» (1978), ««Արտիստի» հրաժեշտի հյուրախաղը» (1980) և այլ ֆիլմեր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950, 1951):

ՖԱՅՍԱԼ I Իբն Հուսեյն (1883–1933), ժամանակակից Իրաքի հիմնադիրն ու Սիրիայի առաջին և վերջին թագավորը՝ 1920-ին՝ Հաշիմյանների հարստությունից: ԱՀՊ-ի տարիներին գեն. Ալբենի էքսպեդիցիոն կորպուսի կազմում եղել է արաբ. զորամիավորումների հրամ., կռվել է թուրքերի դեմ:

ՖԱՅՍԱԼ II, **Ֆեյսալ** (1935–1958), Իրաքի թագավոր՝ 1939-ից՝ Հաշիմյանների հարստությունից: Մինչև չափահաս դառնալը երկիրը կառավարել է նրա խնամակալ Աբդուլ Իլլահը: Ֆ. II եղել է վերջինիս և անգլիամետ Սաիդ Նուրիի ազդեցության ներքո: Սպանվել է 1958-ի Իրաքյան հեղ-յան ժամանակ:

ՖԱՅՐ (Fire) Էնդրյու (ծ. 1959), ամերիկացի մոլ. կենսաբան: Բացահայտել է (Կ. *Մելլոյի* հետ) ՌՆԹ-ինտերֆերենցիայի երևույթը՝ որոշակի գենի էքսպրեսիայի ընկճումը՝ նուկլեոտիդ. հաջորդականությամբ նրան համապատասխանող ՌՆԹ մոլ-ների օգնությամբ: Նորելյան մրց. (2006, Կ. Մելլոյի հետ):

ՖԱՆԱՐՋՅԱՆ Բարդուղիմեոս Արտեմի (1898–1976), ռենտգենաբան: Բժշկ. գիտ. դ-ր (1936), պրոֆ. (1936): ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1956, թղթ. անդամ՝ 1945–ից), ԽՍՀՄ ԲԳԱ թղթ. անդամ (1960): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1940): ՀԽՍՀ-ում ռենտգենաբանության և ուռուցքաբանության հիմնադիրը: Վիկտոր ***Ֆանարջյանի*** հայրը: ՀԽՍՀ ԱՆ ռենտգենաբանության և ուռուցքաբանության (1977–ից՝ Ֆ-ի անվ.) ԳՀԻ հիմնադիր-տնօրեն, ՀԽՍՀ ԳԱ կենսբ. (1956–59) և բժշկ. (1960–63) բաժանմունքների ակադ. քարտուղար: Աշխ-ները վերաբերում են ստամոքսի, աղիների, շնչառ. և ոսկր. համակարգերի հիվանդությունների ռենտգեն. ախտորոշմանը, չարորակ ուռուցքների բուժման հարցերին: Ֆ-ի նախաձեռնությամբ ՀԽՍՀ-ում կազմակերպվել են Հանրապետ. ուռուցքաբան. դիսպանսերը, ՀԽՍՀ ԱՆ ճառագայթակենսբ-յան բաժանմունքը (1985–ից՝ Բժշկ. ճառագայթաբանության ինստ.): «Էքսպերիմենտալ և կլինիկական բժշկական հանդեսի» խմբ., ՀԽՍՀ ռենտգենաբանների, ճառագայթաբանների և ուռուցքաբանների գիտ. ընկ-յան նախագահ (1970–ից): Լենինի, ԽՍՀՄ Աշխ. կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքանշաններ:

ՖԱՆԱՐՋՅԱՆ Վիկտոր Բարդուղիմեոսի (1929–2003), ֆիզիոլոգ: Բժշկ. գիտ. դ-ր (1965), պրոֆ. (1966) ՀՀ ԳԱԱ ակադ. (1982, թղթ. անդամ՝ 1974–ից), փոխնախագահ (1978–90), ՌԳԱ թղթ. անդամ (1984): Վրաստանի գիտ. վաստ. գործիչ (1980): Բարդուղիմեոս ***Ֆանարջյանի*** որդին: 1955–ից աշխատել է ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստ-ում. 1974–78–ին և 1983–2003–ին՝ տնօրեն: Աշխ-ները վերաբերում են ուղեղիկի և ուղեղաբնի գոյացությունների ինտեգրման մեխանիզմներին, ուղեղիկի կենտրոնաձիգ և կենտրոնախույս համակարգերի կազմակերպման, ուղեղաբնային մի շարք շարժիչ գոյացությունների (նյարդ. որոշ կորիզների) և ենթակեղև. այլ կառուցվածքների սինապս. կազմակերպման հարցերին: Ուղեղի ուսումնասիրության միջազգ. կազմ-յան և արտ. մի շարք բժշկ. գիտ. ընկ-ների անդամ: Խորեզմի (Իրան) միջազգ. 1-ին մրց., Յենայի համալսարանի Ֆ. Շիլլերի մեդալ:

ՖԱՆԳ (պանգվե, պահուին), բանտու ժողղ-ների խումբ Հվ. Կամերունում (երկրի ազգ. խոշոր խումբ՝ 3,6 մլն, 2010), Միջին Գաբոնում (0,6 մլն) և Հասարակածային Գվինեայում (0,3 մլն): Հավատացյալները հիմնականում քրիստոնյա են, որոշ մասը պահպանել է ազգ. ավանդ. հավատալիքները:

ՖԱՆԵՐ (գերմ.՝ Furnier, < ֆրանս. fournir – վերադրել), թերթավոր փայտանյութ, որը ստացվում է հիմնականում 3 և ավելի նրբատախտակների թերթերի միմյանց սոսնձումից (սոսնձվող թերթերի թելքերի խաչաձև դասավորվածությամբ):

ՖԱՆԵՐՈՖԻՏՆԵՐ (< հուն. phaneros – բաց, ակնհայտ և phyton – բույս), բույսեր (ծառեր, թփեր, ծառանման լիաններ), որոնց սերմնաբողբոջներն աճը շարունակում են տարվա անբարենպաստ եղանակի ավարտից հետո: Բույսերի կենսաձև է:

ՖԱՆԽԻՈ (Fangio) Խուան Մանուել (1911–1995), արգենտինացի մարզիկ: «Ֆորմուլա-1»-ի լավագույն ավտոարշավորդներից. «Ֆորմուլա-1»-ի աշխարհի առաջնության հնգակի հաղթող (1951, 1954, 1955, 1956, 1957): Շահել է 24 Մեծ մրց.:

ՖԱՆԿՈՆԻ (Fanconi) Գվիդո (1892–1979), շվեյցարացի մանկաբույժ: Աշխ-ները վերաբերում են երեխաների վարակիչ և վիրուս. հիվանդություններին, նյութափոխանակության խանգարումներին, արյան հիվանդություններին ևն: Նկարագրել է մի շարք համախտանիշներ (այդ թվում՝ երկաթանբավարարում), սակավարյունությունը, որոնք կոչվում են նրա անունով:

ՖԱՆՏԱՍՏԻԿԱ (հուն.՝ phantasike – երևակայության արվեստ), կյանքի արտացոլման ձև, երբ իրական պատկերացումների հիման վրա, նրան տրամաբանորեն անհամատեղելի, ստեղծվում է անիրական, հրաշապատում աշխարհի պատկերը: Տարածված է բանահյուսության (հեքիաթ, լեգենդ, վիպերգ) և գրկ-յան մեջ, արվ-ում, կինոյում, կերպարվ-ում: Ֆանտաստիկ. սյուժեն կամ կերպարն օգտագործում են իբրև գեղ. պայմանականություն, որն ակնհայտորեն խախտում է իրական կապերն ու օրինաչափությունները՝ որևէ գաղափար ընդգծելու, կյանքի որևէ երևույթ ավելի վառ և ցայտուն ներկայացնելու համար (Ֆ. Ռաբլեի «Գարգանտյուա և Պանտագրյուել», Ղ. Թոլքինի «Մատանիների տիրակալը»):

Հայ գրկ-յան մեջ ֆանտաստիկ. պատկերներ կան Հ. Թումանյանի «Փարվանա» բալլադում, Ե. Չարենցի «Մահվան տեսիլ» պոեմում և ուր. գործերում: Հատկապես հաճախ կիրառվում է երգիծ. գրկ-յան մեջ (օր.՝ Գ. Սունդուկյանի «Օսկան Պետրոսիչն էն կինքումը» ևն):

ՖԱՆՖԱՆԻ (Fanfani) Ամինտորե (1908–1999), իտալացի պետ. գործիչ: 1954–63 (ընդհատումներով), 1982–83, 1987–ին՝ Իտալիայի վարչապետ: 1968–73, 1976–82, 1985–87–ին՝ Սենատի նախագահ:

ՖԱՍԵՏԱՅԻՆ ԱՉՔԵՐ (ֆրանս.՝ facette – նիստ, աչքահատված), միջատների, խեցգետնակերպների և որոշ անողնաշարների տեսողության զույգ օրգան. գոյանում է բազմաթիվ առանձին աչքերից: Լավ են ընկալում շարժվող օբյեկտները, ապահովում են լայն տեսադաշտ: Տեսողության սրությունը և առարկայի ձևի ընկալումը թույլ է զարգացած:

ՖԱՄՈՒՍՅԱՆ, Ֆասուլյաճյան, դերասաններ, թատեր. գործիչներ: ***Թովմաս Պետրոսի Ֆ.*** (1843–1901): 1869–71–ին թատերախումբ է ղեկավարել Նոր Նախիջևանում, 1872–77–ին՝ Վարդովյան թատրոնի դերասան և ռեժ.: Դերերից են՝ Սանատրուկ (Թ. Թերզյանի «Սանդուխտ կույս»), Դակոբեր (Է. Սյուի «Թափառական հրեան»), Տարտյուֆ, Դոն Ժուան (Մոլիերի «Տարտյուֆ», «Դոն Ժուան», ռեժ.՝ Ֆ.) ևն: Հեղինակ է պիեսների («Երկու քաղցածներ», «Սևի տեղ սպիտակ» ևն):

Կինը՝ **Պայծառ Երեմիայի Ֆ.** (Փափազյան, 1845–1920), դերասանուհի: 1861–ից խաղացել է Կ. Պոլսի Վասպուրական թատրոնում (Սանդուխտ՝ Թ. Թերզյանի «Սանդուխտ կույս», Լուկրեցիա՝ Վ. Հյուգոյի «Լուկրեցիա Բորջա», Ժակլին՝ Մոլիերի «Ակամա բժիշկը», Շուշան, Էփեմիա՝ Գ. Սունդուկյանի «Պեպո»), 1872–77–ին՝ Վարդովյան թատրոնում: Հեղինակ է «Միջնորդ կինը» պիեսի:

ՖԱՎՆՈՒՍ (Faunus), պտղաբերության աստվածը հուն. դից-յան մեջ, անասնապահության, դաշտերի և անտառների հովանավորը: Ֆ-ին համապատասխանում է ***Պանը***:

ՖԱՎՈՐՍԿԻ Ալեքսեյ Եվգրաֆովիչ (1860–1945), ռուս. քիմիկոս-օրգանիկ, գիտ. դպրոցի հիմնադիր: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1929): Սոց. աշխ. հերոս (1945): Աշխ-ները վերաբերում են ացետիլենի ածանցյալներին, ցիկլիկ ածխաջրածիններին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941):

ՖԱՎՈՐՍԿԻ Վլադիմիր Անդրեևիչ (1886–1964), ռուս. գրաֆիկ, գեղանկարիչ: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1963), ԽՍՀՄ Գեղարվ-ի ակադ-ի անդամ (1962): Փայտափորագրության ռուս. դպրոցի հիմնադիրը: Գործերին բնորոշ են կերպարների փիլ. խորությունն ու պայծառությունը («Ռոստոնսկի», 1929, դիմանկար, «Ասք Իգորի ճակատամարտի մասին», հրտ.՝ 1954, Ա. Ս. Պուշկինի «Բորիս Գոդունով», 1955, «Փոքր ողբերգություններ», հրտ.՝ 1961, գրքերի նկարազարդումներ): Հեղինակ է նաև լինոփորագրությունների: Լենինյան մրց. (1962):

ՖԱՎՈՐՍԿԻ Օլեգ Նիկոլաևիչ (ծ. 1929), ռուս. ջերմատեխնիկ: ՌԳԱ ակադ. (1990): Աշխ-ները վերաբերում են էներգ. սարքավորումների (նաև տիեզ. թռչող սարքերի) ջերմատեխնիկային: Լենինյան (1982), ՌԴ Պետ. (2000) մրց-ներ:

ՖԱՏԵԵՎԱ Նատալյա Նիկոլաևնա (ծ. 1937), ռուս կինոդերասանուհի: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1980): Նկարահանվել է «Ճակատամարտ ճանապարհին», «Երեք գումարած երկու» (ռեժ՝ Հ. Հովհաննիսյան), «Բարև, ես եմ» (ռեժ՝ Ֆ. Դովլաթյան), «Հաջողության ջենտլմեններ», «Շահում», «Դոն Կիխոտի երեխաները», «Անյա Պավլովա», «Գաղտնիք», «Հանդիպման վայրը փոխել չի կարելի», «Երեկոյից մինչ կեսօր», «Կորոլյով» (վերջին երեքը՝ հեռուստաֆիլմ) և այլ կինոնկարներում:

ՖԱՐԱ, էլ. ունակության միավորը ՄՄՀ-ում: Նշանակում են Ֆ (F): Անվանել են Մ. ***Ֆարադեյի*** պատվին: $1\ Ф = 8{,}99 \cdot 10^{11}$ *սմ* (ՍԳՎԷ միավոր) = 10^{-9} ՍԳՎՄ միավոր:

ՖԱՐԱԴԵՅ (Faraday) Մայքլ (1791–1867), անգլիացի ֆիզիկոս: Էլեկտրամագնիս. դաշտի ուսմունքի հիմնադիրը: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1830): Հայտնաբերել է հոսանքի քիմ. ազդեցությունը, էլեկտրականության և մագնիսականության, մագնիսականության և լույսի միջև եղած փոխադարձ կապը: Հայտնագործել է (1831) էլեկտրամագնիս. ինդուկցիան, երևույթ, որը դրվել է ***էլեկտրատեխնիկայի*** հիմքում: Բացահայտել է (1833–34) էլեկտրոլիզի օրենքները, որոնք կոչվել են իր անունով, հայտնաբերել է պարա- և դիամագնիսականությունները, լույսի բևեռացման հարթության պտույտը՝ մագնիս. դաշտում (***Ֆարադեյի էֆեկտ***): Ապացուցել է էլեկտրականության տարբեր տեսակների նույնականությունը: Ներմուծել է էլ. և մագնիս. դաշտերի գաղափարը, կանխատեսել էլեկտրամագնիս. ալիքների գոյության փաստը:

ՖԱՐԱԴԵՅԻ ԷՖԵԿՏ, հաստատուն մագնիս. դաշտի երկայնքով նյութում տարածվող գծային բևեռացված լույսի ***բևեռացման հարթության*** պտույտը: Հայտնաբերել է Մ. ***Ֆարադեյը*** 1845-ին:

ՖԱՐԱԴԵՅԻ ՀԱՍՏԱՏՈՒՆ, ***Ֆարադեյի թիվ*** (F), e տարր. էլ. լիցքի և N_A ***Ավոգադրոյի հաստատունի*** արտադրյալը, հավասար է այն էլ. լիցքի քանակությանը, որը, անցնելով էլեկտրոլիտի լուծույթի միջով, էլեկտրոդի վրա անջատում է միա-

արժեք նյութի 1 մոլ: Անվանվել է ի պատիվ Մ. *Ֆարադեյի*: Ա. զ–ի ածխածնային սանդղակում F = (96485,3399 ± 0,0024) *Կլ/մոլ*, կոչվում է **ֆարադեյ**:

ՖԱՐԱԴԵՅԻ ՕՐԵՆՔՆԵՐ, էլեկտրոլիզի հիմն. քանակ. օրենքները, որոնց համաձայն՝ անջատված նյութերի m զանգվածները համեմատական են էլեկտրոլիտով անցած էլեկտրականության զ քանակին (1–ին օրենք) և՝ նյութի A քիմ. համարժեքին (2–րդ օրենք): Ֆ. օ. մաթեմատիկորեն կարելի է ներկայացնել 1 հավասարման տեսքով՝ m = (A/F)q=kq, F–ը *Ֆարադեյի հաստատունն* է, k=A/F – էլեկտրաքիմ. համարժեքը: Փորձնականորեն բացահայտել է Մ. *Ֆարադեյը* 1833–34–ին:

ՖԱՐԱՋ, XIV–XV դդ–ի հույն ճարտ.: 1402–09–ին կառուցել է Մեծոփավանքի Սբ Աստվածածին եկեղեցին՝ 12 հայ քարգործ վարպետների հետ (Ատոմ, Սիրուն, Դավիթ, Տիրատուր, Զաքար Կիրակոս և ուր.): *Թոխմա Մեծոփեցին* նրան անվանել է «հույժ իմաստուն և ճարտար շինող»:

ՖԱՐԵՆՀԱՅՏ (Fahrenheit) Դանիել Գաբրիել (1686–1736), գերմանացի ֆիզիկոս: Պատրաստել է սպիրտի (1709) և սնդիկի (1714) ջերմաչափներ: Առաջարկել է (1724) հետագայում իր անունով կոչված Ֆարենհայտի սանդղակը: Տես *Ջերմաստիճանային սանդղակներ*:

ՖԱՐԵՐՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ (Faeroerne), կղզեխումբ Ատլանտ. օվկ–ի հս–արլ–ում: Դանիայի ինքնավար տարածաշրջան է: Ընդգրկում է ավելի քան 20 կղզի: Տարածքը՝ 1,4 հզ. *կմ²*, բն.՝ 49 հզ. (2016): Բարձր.՝ մինչև 882 *մ*:

ՖԱՐԵՐՅԻՆԵՐ, *Ֆարերյան կղզիների* հիմն. բնակչությունը (շուրջ 46 հզ., 2010): Լեզուն՝ ֆարերերեն: Հավատացյալները հիմնականում լյութերական են:

ՖԱՐԻՆԳԻՏ, տես *Լմպանաբորը*:

ՖԱՐԿԱՇ (Farkas) Բերտալան (ծ. 1949), հունգ. 1–ին տիեզերագնաց օդաչուն, փոխգնդ.: Հունգարիայի (1980), ԽՄ (1980) հերոս: Թռել է խորհրդ. «Սոյուզ–35, –36» տիեզերանավերով և «Սալյուտ–6» տիեզերակայանով (Վ. Ն. *Կուբասովի* հետ, 1980–ի մայիս–հունիս): Լենինի շքանշան (1980):

«ՖԱՐՀԱԴ ԵՎ ՇԻՐԻՆ» («Խոսրով և Շիրին»), էպիկ. պոեմ Արևելքի բազմաթիվ ժողդ–ների բանահյուսության և գրկ–յան մեջ: Սիրո ողբերգ. պատմություն, որի հերոսներն ապրել են VI–VII դդ–ում և հարաբերակցվել են իրական պատմ. նախատիպերի հետ: Առաջին գր. մշակումը՝ Նիզամի Գյանջևիի: Հայ. հրատարակվել է 1913–ին («Ֆահրադ ու Շիրին դաստան»):

«ՖԱՐՄԱ», գիտագործ. եռամսյա հանդես (2011–ից, Երևան): Հայաստանի դեղարտադրողների և ներմուծողների միության հրտ–յուն: Գլխ. խմբ.՝ Արամ Ղազարյան:

ՖԱՐՄԱԿՈՊԵԱ (< հուն. pharmakon – դեղանյութ և poieo – պատրաստել), **դեղապատրաստում**, չափորոշիչների և դրույթների ժող., որը կանոնակարգում է դեղանյութերի որակի հանդեպ պահանջները: Առաջին Ֆ. հրատարակվել է 1498–ին Ֆլորենցիայում, որով սկիզբ է դրվել դեղանյութերի հերթական համապրակալմանը:

ՖԱՐՄԱՆ (Farman) Անրի (1874–1958), ֆրանսիացի ավիակոնստրուկտոր, օդաչու և արդյունաբերող, ավիացիայի սկզբնավորողներից: Փարիզի մերձակայքում կազմակերպել է (1909) օդաչուների ուսուցման դպրոց: Ստեղծել է մոտ 30 տեսակի ռազմ. ու քաղաքաց. օդանավեր և ավիաշարժիչներ: 1912–ին ստեղծել է «Ֆ.» ֆիրման:

ՖԱՐՄԱՆՅԱՆ Տիգրան Սիմոնի (ծ. 1953), լրագրող, խմբ.: 1995–2001–ին՝ *«02»* շաբաթաթերթի, 2001–ից՝ *«Հայաստանի Հանրապետություն»* օրաթերթի գլխ. խմբ.: ՀԺՄ «Ոսկե գրիչ» մրց. (1982):

ՖԱՐՄԱՆՅԱՆՑՆԵՐ, բալետի արտիստներ. **Գեորգի Կարապետի Ֆ.** (1921–1995): ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1951): 1940–62–ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մենապարող (Շչելկունչիկ, Ծաղրածու՝ Պ. Ի. Չայկովսկու «Շչելկունչիկ», «Կարապի լիճը», Բազիլ՝ Լ. Մինկուսի «Դոն Կիխոտ», Ֆիլիպ՝ Բ. Վ. Ասաֆևի «Փարիզի հուրը», ևն), 1962–84–ին՝ ԽՍՀՄ բանակի Ա. Վ. Ալեքսանդրովի անվ., 1984–95–ին՝ Մոսկվայի ռազմ. օկրուգի երգի–պարի անսամբլների բալետմայստեր: Քույրը՝ **Եվգենյա Ֆ.** (1920–2016): ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1968), ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ: 1938–59–ին՝ Մոսկվայի Մեծ թատրոնի մենապարուհի (Կոլումբինա՝ Ռ. Գլիերի «Պղնձե հեծյալը», ևն):

ՖԱՐՄԱՆՈՎ (Ֆարմանյանց) Թեոդոր (Թեոդորոս) Գրիգորի (1867–1944), ատամնաբույժ, բժշկ. կրթության կազմակերպիչ: Ատրախանի Աղաբյան ուսումնարանի բժիշկ: 1906–ին նրա ղեկավարությամբ Աստրախանում բացվել է բուժ‹ակների և մանկաբարձների դպրոց, որի տնօրենն է եղել մինչև 1920–ը (հետագայում վերածվել է բժշկ. ուսումնարանի): 1918–ին նշանակվել է առողջապ–յան ժողկոմատի փոխնախագահ, Աստրախանի պետ. համալսարանում հիմնադրել բժշկ. ֆակ., մշակել օդոնտոլոգիայի դասընթաց, հիմնադրել օդոնտոլոգների գիտ. ընկ.: Աստրախանի բժիշկներից առաջինն է արժանացել «Աշխատանքի հերոսի» կոչման:

ՖԱՐՄԻ, *պարսկերենի* բուն պարսկ. անվանումը:

ՖԱՑԻԱ (լատ.՝ facies – տեսք, կերպարանք) (երկրբ.), 1. նստվածքակուտակման ֆիզիկաաշխարհագր. պայմանները (կամ իրադրությունը)՝ միջավայրի բոլոր առանձնահատկություններով՝ շարժընթացով, քիմ. ռեժիմով, օրգ. աշխարհով, խորությամբ ևն (օր.՝ տիղմային հոսքերի, հողմահարման կեղևի, բուստ., խորջրյա նստվածքներ): 2. Ապար կամ նստվածք, որն առաջանում է որոշակի ֆիզիկաաշխարհագր. (երկրաքիմ., տեկտ. ևն) իրադրության մեջ (օր.՝ ծով. Ֆ., ցամաք. Ֆ.): 3. Լանդշաֆտագիտ–յան մեջ՝ աշխարհագր. լանդշաֆտի տարր. ձևաբան. միավորը, բնասահմանի (գետի, անտառի, լեռան) կառուցվածք. մասը:

ՖԱՈՒ (գերմ.՝ V, < Vergeltungswaffe – վրիժառության զենք), հեռավոր գործողության կառավարվող հրթիռ. զենքի անվանումը (ֆաու–1 թևավոր և ֆաու – 2 ձգաբան. հրթիռներ), որն ստեղծվել է Գերմանիայում և 1–ին անգամ կիրառվել Մեծ Բրիտանիայի դեմ 1944–45–ին: Հրթիռները նվազ հուսալի ցածրաճշգրիտ զենք էին, որոնց դյուրությամբ ոչնչացնում էին անգլ. կործանիչները:

ՖԱՈՒԶԵՐ (Fauser) Ջակոմո (1892–1971), իտալացի քիմիկոս–տեխնոլոգ: Ստեղծել է (1920) ճնշման տակ ամոնիակի սինթեզի 1–ին սարքավորումը: Աշխ–ները վերաբերում են ազոտ. թթվի, միզանյութի ստացման տեխնոլոգիաներին ևն:

ՖԱՈՒՆԱ, (լատ.՝ Fauna), անտառների և դաշտերի աստվածուհին, կենդանիների հովանավորը հռոմ. դից–յան մեջ, որոշակի տարածքում ապրող կենդանիների տեսակների՝ պատմականորեն ձևավորված ամբողջությունը: Չնավորվում է տարբեր ծագման կենդանիներով (ավտոխթոններ, ալոխթոններ և ներգաղթյալներ): «Ֆ.» եզրույթը կիրառվում է նաև կարգաբան. որևէ կարգում ընդգրկված կենդանիների վերաբերյալ (թռչունների Ֆ.՝ թռչնաֆաունա, ձկների՝ իխթիոֆաունա):

ՖԱՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՅՈՒՄ, Երկրի մակերևույթի բաժանումը համաստորադաս շրջանների, որոնք տարբերվում են *ֆաունայի* բնաշխարհիկությամբ և զարգացման պատմության ու տարաբնակեցման առանձնահատկություններով: Երկրի ցամաքը բաժանված է 4 ֆաունիստ. թագավորությունների (Արկտոգեա, Պալեոգեա, Նեոգեա և Նոտոգեա), անտարկտիկ. ցամաքը, որը բնակեցված է առավելապես ցամաք. կենդանիներով, ոչ մի թագավորության մեջ չի մտնում:

ՖԱՈՒՍՏ (Faust), գերմ. ավանդազրույցի և համաշխ. գրկ–յան ու արվ–ի հերոս, գիտնական, որը, հանուն գիտ–յան, դաշն է կնքել դևի (Մեֆիստոֆելի) հետ: Ֆ–ի նախատիպը թափառաշրջիկ գրբաց Յոհան Ֆաուստն է (մոտ 1480–մոտ 1540), պատմ. անձնավորություն, որի մասին պահպանվել են ժամանակակիցների վկայությունները («Հռչակավոր կախարդ և գրբաց դոկտոր Յոհան Ֆաուստի պատմությունը», 1587): Ֆ. դարձել է գերմ. «ժողովրդական գրքերի», տիկնիկ. ներկայացումների և մսնախաղերի, *«Գրոհ և փոթորիկ»*–ի բանաստեղծների սիրելի հերոսը: Համաշխ. ճանաչում ունեն Յ. Վ. Գյոթեի («Ֆաուստ»), Թ. Մանի («Դոկտոր Ֆաուստոս», 1947) գործերը: Ֆ–ի սյուժեով ստեղծվել են օպերաներ, սիմֆոնիկ ստեղծագործություններ:

ՖԱՔՍԻՄԻԼԱՅԻՆ ԿԱՊ, հնացած՝ **լուսահեռագրային կապ**, գրաֆիկ. տեղեկույթի (տեքստի կամ աղյուսակի, գծագրերի սխեմաների, գրաֆիկների, լուսանկարների անշարժ պատկերների) հաղորդման էլ. եղանակ: Իրականացվում է ֆաքսիմիլային սարքերով և էլեկտրակապի, այդ թվում՝ հեռախոսակապի միջոցով:

ՖԱՔՍԻՄԻԼԵ (< լատ. fac simile – բառացի՝ նմանակիր), ձեռագրի, ստորագրության կամ պատկերի ճշգրիտ ընդօրինակությունը կամ վերարտադր–յունը լուսամեխ. եղանակով: Ֆ–ով հիմնականում վերարտապագրվում են անցյալի արժեքավոր հրտ–յունները (կոչվում են ֆաքսիմիլային) պահպանելով չափերը, թղթի տեսակն ու գույնը, տպագրության եղանակն ու կազմը:

ՖԵԴԵՐԱՏՆԵՐ (լատ.՝ foederati – միություն), 1. Հռոմ. կայսրության սահմաններում ծառայող բարբարոս ցեղեր. ծառայության դիմաց բնակության համար ստացել են սահմանամերձ հողեր և ռոճիկ: Ֆ–ի դերն առանձնապես մեծ էր IV–V դդ–ում: 2. Ֆրանս. բուրժ. հեղ–յան ժամանակ (XVIII դ.) կամավորների զորամիավորումների անդամներ, որոնք Փարիզ էին ուղևորվում հեղ–յունը ներքին հակահեղ–յունից և օտարերկրյա ինտերվենցիայից պաշտպանելու համար: 3. 1815–ին՝ *«Հարյուր օր»*–ի ժամանակ, հականապոլեոնյան ուժերի դեմ պայքարելու նպատակով ստեղծված կամավոր. ջոկատների անդամները: 4. Ազգ.

գվարդիայի հանրապետ. դաշնության մարտիկները, որոնք պաշտպանում էին 1871-ի *Փարիզի կոմունան*:

ՖԵԴԵՐԵՐ (Federer) Ռոջեր (ծ. 1981), շվեյցարացի մարզիկ (թենիս), «Մեծ սադավարտի» 19 տուրնիրի (2003–17), այդ թվում՝ 8 Ուեմբլդոնի (2003–07, 2009, 2012, 2017), Ավստրալիայի (2004, 2006–07, 2010, 2017), Ֆրանսիայի (2009), ԱՄՆ (2004–08) բաց առաջնությունների հաղթող: Օլիմպ. խաղերի ոսկե (2008, զուգախաղում), արծաթե (2012) մեդալներ:

ՖԵԴԻՆ Կոնստանտին Ալեքսանդրովիչ (1892–1977), ռուս գրող: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1958): Սոց. աշխ. հերոս (1967): 1959–71-ին՝ ԽՍՀՄ ԳԽ 1-ին քարտուղար, 1971-ից՝ նախագահ: Հեղինակ է «Քաղաքներ և տարիներ» (1924, հայ.՝ 1969), «Եղբայրներ» (1927–28) վեպերի, «Առաջին բերկրանքը» (1945, հայ.՝ 1954), «Արտասովոր ամառը» (1947–48, հայ.՝ 1952), «Խարույկ» (գիրք 1, 2, 1961, 1965) եռերգության, «Գորկին մեզ հետ» (1941–68) հուշագրության: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949):

ՖԵԴՅՈՒՆԻՆՍԿԻ Իվան Իվանովիչ (1900–1977), ռուս. խորհրդ. զորահրամ., բանակի գեն. (1955): ԽՄ հերոս (1939): ՀՄՊ-ի ժամանակ՝ Վոլխովի և Բրյանսկի ռազմաճակատների փոխհրամ., 1951–54-ին՝ Գերմանիայում խորհրդ. զորքերի գլխ. փոխհրամ.: 1954–65-ին՝ ԶՕ հրամ.:

ՖԵԴՈՍԵԵՎ Վլադիմիր Իվանովիչ (ծ. 1932), ռուս. դիրիժոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1980): 1959-ից՝ Ռուս. կենտր. հեռուստատեսության և ռադիոյի ռուս. ժող. գործիքների, 1974-ից՝ Մեծ սիմֆ. նվագախմբի գեղ. ղեկ. և գլխ. դիրիժոր, 1997–2005-ին՝ նաև Վիեննայի սիմֆ. նվագախմբի դիրիժոր: ԽՍՀՄ Պետ. մրց. (1989):

ՖԵԴՈՍԵԵՎԱ-ՇՈՒԿՇԻՆԱ Լիդիա Նիկոլաևնա (ծ. 1938), ռուս. կինոդերասանուհի: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1984): Վ. Մ. *Շուկշինի* կինը: Ստեղծել է պարզ, մեծ հոգու տեր ռուս կնոջ ամբողջ. կերպարներ ամուսնու ֆիլմերում («Տարօրինակ մարդիկ», «Պեչկին-լավոչկի», «Կարմիր բռինչ»): «Տասներկու աթոռ», «Կաշառք», «Պետերբուրգյան գաղտնիքներ» (երեքն էլ՝ հեռուստաֆիլմ) և այլ կինոնկարներում աչքի է ընկել վառ, բնութագր. դերերով:

ՖԵԴՈՍՈՎ Եվգենի Ալեքսանդրովիչ (ծ. 1929), ԱԽՀ բնագավառի ռուս գիտնական: ՌԳԱ ակադ. (1984): Սոց. աշխ. հերոս (1983): Աշխ-ները վերաբերում են կառավարման բազմաստիճան համակարգերի վերլուծությանը և սինթեզին: Լենինյան մրց. (1976):

ՖԵԴՈՍՈՎ Ալեքսանդր Վասիլևիչ (1932–1984), ռուս փորձարկող օդաչու: Ավիացիայի գեն-մայոր (1983): ԽՄ հերոս (1966): Միջազգ. կարգի ս. վ. (1976): Փորձարկել է մի շարք գերձայն. ինքնաթիռներ, այդ թվում՝ ՄիԳ-21, E-266: Թռիչքի բարձր-յան՝ համաշխ. ռեկորդակիր՝ 37 650 *մ* (1977): Լենինյան մրց. (1981): Զոհվել է փորձարկման ժամանակ:

ՖԵԴՈՍՈՎ Գրիգորի Իվանովիչ (1916–1957), ռուս ֆուտբոլիստ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1940): ԽՍՀՄ չեմպիոն (1946–48): Ռուս. ֆուտբոլի պատմության լավագույն ֆուտբոլիստներից: 1958-ին սահմանվել է Ֆ-ի անվ. փոխանցիկ մրց.՝ ԽՍՀՄ (1992-ից՝ ՌԴ) ֆուտբոլի առաջնության ամենաարդյունավետ թիմի համար:

ՖԵԴՈՐԵՆԿՈ Յակով Նիկոլաևիչ (1896–1947), խորհրդ. զորահրամ.: Զրահատանկ. զորքերի մարշալ (1944): 1940-ից՝ Կարմիր բանակի Գլխ. ավտոզրահատանկ. վարչության պետ, 1942-ից՝ զրահատանկ. մեքենայացված զորքերի հրամ.:

ՖԵԴՈՐԵՆԿՈ Նիկոլայ Պրոկոֆևիչ (1917–2006), ռուս. տնտեսագետ: ՌԳԱ ակադ. (1964): 1963–85-ին՝ ԽՍՀՄ ԳԱ կենտր. տնտ-մաթ. ինստ-ի տնօրեն: Աշխ-ները վերաբերում են քիմ. արդ-յան էկոնոմիկայի, ժող. տնտ-յան օպտիմալ գործունեության խնդիրներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1970):

ՖԵԴՈՐԵՆԿՈ Նիկոլայ Տրոֆիմովիչ (1912–2000), ռուս. բանասեր, արևելագետ, պետ. գործիչ: ԽՍՀՄ ԳԱ թղթ. (1958), Տոկիոյի չինագիտ-յան ինստ-ի պատվ. (1961) անդամ, Ֆլորենցիայի արվ-ի ակադ-ի պատվ. ակադ. (1975): 1955–58-ին՝ ԽՍՀՄ ԱԳ նախարարի տեղակալ: 1970–87-ին՝ «Ինոստրաննայա լիտերատուրա» (ռուս.) ամսագրի գլխ. խմբ.: Հեղինակ է Չինաստանի և Ճապոնիայի մշակույթների պատմությանը, չին. դաս. և ժամանակակից գրկ-յանը վերաբերող աշխ-ների:

ՖԵԴՉԵՆԿՈ, ռուս գիտնականներ, ամուսիններ. **Ալեքսանդր Պավլովիչ** (1844–1873), բնախույզ: Բնագիտ-յան, մարդաբանության և ազգագրության սիրող. ընկ-յան միջատաբան. հանձնաժողովի նախագահ: Ճանապարհորդել է Միջին Ասիայով (1868–71), հայտնագործել Զաալյան լ-շղթան: Զոհվել է Ալպերում՝ Մոնբլան բարձրանալիս: **Օլգա Ալեքսանդրովնա** (1845–1921), բուսաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ (1906), ՌԳԱ (1917) թղթ. անդամ: Ամուսնու հետ ճանապարհորդել է Միջին Ասիայով, մասնակցել է նաև Հվ. Ուրալի, Ղրիմի, Կովկասի գիտ. արշավներին: Աշխ-ները վերաբերում են ֆլորիստիկային, օտարամուտ բույսերին և բույսերի աշխարհագրությանը:

ՖԵԴՐԱ, Կրետեի *Մինոս* արքայի դուստրը հուն. դից-յան մեջ, որը սիրահարվել էր իր խորթ որդի Իպպոլիտին: Մերժվելով վերջինից՝ ինքնասպան է եղել:

ՖԵԹԹԵՐ (Vetter) Պաուլ (1850–1906), գերմանացի հայագետ: Հայկ. իրականությանը վերաբերող աշխ-ներն ամփոփված են «Հայկական աշխատասիրութիւնք հայագէտ Պ. Ֆէթթէրի» (1895) ժող-ում: Ուսումնասիրել է Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործունեությունը, հայոց այբուբենի ստեղծման հանգամանքները, անդրադարձել Մովսես Խորենացու գործունեության ժամանակին և նրա «Պատմություն Հայոց»-ին: Հեղինակ է Կորյունի, Եզնիկ Կողբացու, Ներսես Շնորհալու գործերի մասին հոդվածների:

ՖԵԹՎԱՃՅԱՆ Արշակ Աբրահամի (1866–1947), նկարիչ: 1891–95-ին ստեղծագործել է Վիեննայում, ապա՝ Ս. Պետերբուրգում: Հեղինակ է Արլ. Հայաստանի ճարտ. հուշարձանների ավելի քան 2000 մատիտանկար ու ջրաներկ գործերի, դիմանկարների, հայոց պատմության, դից., ազգագր. թեմաներով աշխ-ների [«Արևելյան փոստ», «Սասունցի կինը» («Մանուկ Հայաստան), «Ղևոնդ Ալիշան», «Վենետիկի Ս. Մարկոսի տաճարը», «Մատթեոս Իզմիրլյան» ևն]: Զևավորել է Թիֆլիսի Սբ Գևորգ եկեղեցին, պատրաստել Կարսի Սբ Գևորգ եկեղեցու բեմը, դուռը ևն: 1922-ից՝ ԱՄՆ-ում: Ըստ Ֆ-ի կտակի՝ գործերը հանձնել են ՀԱՊ-ին:

ՖԵԼԴԻՆ (Fäldin) Թուրբյոռն (1926–2016), շվեդ պետ. գործիչ: Շվեդիայի վարչապետ՝ 1976–78, 1979–82-ին, 1969-ից՝ փոխնախագահ: 1971–85-ին՝ Կենտրոն կուս-յան առաջնորդ:

ՖԵԼԴՄԱՆ Դմիտրի (Մարկուս) Միսեևիչ (1902–1963), հրեա կինոօպերատոր: ՎԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1958): Նկարահանել է «Խաղաղ Դոն» (1931), «Պետերբուրգյան գիշեր» (1934), «Պապո» (1935), «Դավիթ Բեկ» (1944, վերջին երկուսը՝ Գարուշ Բեկնազարյանի հետ), «Լեռնային լճի գաղտնիքը (1954, Իվան Դիլդարյանի հետ, երեքն էլ՝ հայֆիլմ), «Օթարի այրին» (1958), «Առավոտ» (1961) և այլ գեղ. ֆիլմեր, նաև գիտահանրամատչելի՝ «Հայաստանի գինիները» (1953, Նորայր Սիմոնյանի հետ) կինոնկարը ևն:

ՖԵԼԴՄԱՐՇԱԼ, բարձրագույն զինվ. կոչում որոշ պետությունների բանակներում: XIV–XVI դդ-ում եղել է գլխ. զորահրամ-ի տիտղոս Տևտոնյան ուխտի կազմավորած պետություններում, XVI դ-ում՝ գերմ. պետություններում: 1699-ին Ռուսաստանում ընդունվել է գեն-Ֆ. զինվ. կոչումը:

ՖԵԼԵԿՅԱՆ, դերասանուհիներ, քույրեր. **Վարդիթեր Սիմոնի Ֆ.** (1869–1952), **Մարի-Հրանուշ Սիմոնի Ֆ.** (1875–1936), գործել են 1880-ական թթ-ի կեսից Թիֆլիսում: 1904-ին Եգիպտոսում հիմնադրել են թատերախումբ, 1908-ին հանդես եկել ԱՄՆ-ում: 1919-ին Կ. Պոլսում հիմնադրել են «Ֆելեկյան» թատերախումբը (գործել է մինչև 1922-ը): Վարդիթեր Ֆ. աչքի է ընկել դրամատիկ. (Կրուչինինա՝ Ա. Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», Մարգարիտ Գոթիե՝ Ա. Դյումա-որդու «Կամելիազարդ տիկինը», ևն), Մարի Հրանուշ Ֆ.՝ կատակերգ. (Մադամ Սան Ժեն՝ Սարդուի և Մորոյի «Մադամ Սան Ժեն», Ֆրուֆրու՝ Մեյլակի և Հալևիի «Ֆրու-ֆրու», ևն) դերերով: Մարի-Հրանուշ Ֆ-ի դուստրը՝ **Քարաջա Թոթո** (Ֆելեկյան Իրմա Հարությի, 1912–1992), դերասանուհի, երգչուհի, պարուհի: 1924-ից հանդես է եկել օպերետում, Կ. Պոլսի թատրոններում, 1945-ից՝ իր (ամուսնու հետ) հիմնադրած «Իսթանբուլ թիյաթրոսա» թատերախմբում: Նկարահանվել է կինոյում, կատարել թուրք., անգլ., ֆրանս., իտալ. երգեր:

ՖԵԼԵՔՅԱՆ Հարություն Հայկի (1931–2005), գրականագետ, հրապարակախոս, խմբ., հրտ.: Պատմ. գիտ. դ-ր (1970), պրոֆ. (1971): ՀԽՍՀ վաստ. ժուռնալիստ (1981): 1967–70-ին՝ *«Բանբեր Երևանի համալսարանի»* պատ. քարտուղար, 1970–77-ին՝ խմբ-ի տեղակալ, 1978–86-ին՝ գլխ. խմբ., 1981–91-ին՝ «Սովետական գրող» (*«Նաիրի»*) հրտչ-յան տնօրեն, 1991–2002-ին՝ ՀՀ Կառ-յանն առընթեր արխիվ. գործի վարչության պետ: Հեղինակ է «Ալեքսանդր Ծատուրյան» (1965), «Հրապարակախոսություն և գրականություն» (1975), նաև պարբ. մամուլի վերաբերյալ աշխ-ների:

ՖԵԼԶԻՏ (գերմ.՝ Felsit), թթու էֆուզիվ ապարների հիմն. մանրահատիկ զանգվածը, կազմված է կալիում. դաշտ. սպաթից (օրթոկլազ) և քվարցից, երբեմն՝ թթու պլագիոկլազից և մուգ գույնի միներալներից (պիրոքսեն, բիոտիտ): Երբեմն «Ֆ.» տերմինը ներառվում է ապարի անվանման մեջ (օր.՝ ֆելզոդացիտ, ֆելզոֆիր):

ՖԵԼԶԻՏԱՅԻՆ ՏՈՒՖ, գաղտնաբյուրեղ. կառուցվածքով և շերտ. կազմվածքով հրաբխանստվածք. ապար: Բնորոշ են վարդագույն, դեղնավուն, երկնագույն և կանաչավուն երանգները: Դեկորատիվ երեսպատման շինանյութ է: Հայաստա-

նում տարածված են Նոյեմբերյանի, Թումանյանի և Վայքի տարածաշրջաններում:

ՖԵԼԼԻՆԻ (Fellini) Ֆեդերիկո (1920–1993), իտալացի կինոռեժ., սցենարիստ: Ջ. *Սագինայի* ամուսինը: Ստեղծել է սեփ. կինոոճը, բանաստեղծորեն վերափոխել է իրականությունը՝ համադրելով ողբերգակոմիկ., կառնավալ., ֆեերիայի տարրեր («Սպիտակ շեյխ», 1952, «Մայրիկի բալիկները», 1953, «Ճանապարհ», 1954, «Կաբիրայի գիշերները», 1957, «Քաղցր կյանք», 1959, «Կանանց քաղաքը», 1980, «Եվ նավը լողում է...», 1983, «Լուսնի ձայնը», 1990, ևն): Նորար. ֆիլմերում («Ութ և կես», 1963, «Ջուլիետան և ոգիները», 1965) միավորել է իրական աշխարհի կերպարներ և հերոսների սուբյեկտիվ տեսիլներ: Իտալիայի պատմ. ճակատագրին են նվիրված «Հռոմ» (1972), «Ամարկոդ» (1973), «Նվագախմբի փորձը» (1979), «Հարցազրույց» (1987) ֆիլմերը:

«Օսկար» մրց. (1956, 1957, 1964, 1974, 1993):

ՖԵԼՆԵՐ (Fellner) Ուիլյամ (1905–1983), ամերիկացի տնտեսագետ, նեոքեյնսականության ներկայացուցիչ: Աշխ-ները վերաբերում են դրամաշրջանառության տեսության, մրցակցության, տնտ. ածի ու շրջափուլի խնդիրներին:

ՖԵԼՏԵՆ (Velten) Գեորգ Ֆրիդրիխ (Յուրի Մատվեևիչ, 1730–1801), ռուս. ճարտ.: Ս. Պետերբուրգում կառուցել է Հին Էրմիտաժը (1771–87), Ամառ. այգու ցանկապատը (1773–86): Ձմեռ. պալատը կառուցելիս եղել է Ռաստրելլիի օգնականը: Անդրադարձել է նաև նոր գոթ. ոճին, մասնակցել (1769–ից) Նևայի առափնյա գրանիտե շինությունների կառուցմանը:

ՖԵԼՓՍ (Phelps) Էդմունդ (ծ. 1933), ամերիկացի տնտեսագետ: Աշխ-ները վերաբերում են քաղաքատնտ-յան, միկրո- և մակրոտնտ. տեսության, գրաղվածության ու ինֆլյացիայի խնդիրներին: Ատլանտ. միջազգ. տնտ. ընկ-յան նախագահ (1983–84): Նորելյան մրց. (2006):

ՖԵԼՓՍ Մայքլ Ֆրեդ (ծ. 1985), ամերիկացի լողորդ: Ռեկորդ. թվով օլիմպ. ոսկե մեդալակիր՝ 23 (13 անգամ՝ անհատ. տրածությունում, 10՝ փոխանցալողում), աշխարհի 26-ակի չեմպիոն, 39-ակի ռեկորդակիր: Նվաճած պարգևների թվով (28)՝ օլիմպ. խաղերի պատմության բացարձակ չեմպիոն (01.06.2011):

ՖԵՄԻՆԱՅՈՒՄ (լատ.՝ femina – կին, էգ), 1. արական սեռի օրգանիզմում իգական սեռի 2-րդային սեռ. հատկանիշների ի հայտ գալը (օր.՝ հավերին բնորոշ փետուրների ի հայտ գալն աքաղաղների մոտ): Կապված է ներզատիչ գեղձերի գործունեության խանգարումների հետ: 2. Հաս. կյանքի որևէ բնագավառում, հաս-յան մեջ կանանց դերի և ազդեցության աճը:

ՖԵՄՏՈ... (լատ.՝ femten – տասնհինգ), նախածանց՝ ելման միավորների 10^{-15}-ին հավասար մասերի միավորների անուններ կազմելու համար. նշանակում են *ֆմ* (f): Օր.՝ 1 *ֆմ* = 10^{-15} *մ*:

ՖԵՅԴԵՐ (Feyder) Ժակ (1888–1948), ֆրանսիացի կինոռեժ.: Նկարահանել է «Գրենկերիլ» (1922, ըստ Ա. Ֆրանսի), «Գրիբիշ» (1926), «Թերեզ Ռաքեն» (1927, ըստ Է. Զոլայի), «Նոր պարոններ» (1928), «Մեծ խաղ» (1934), ««Սիմոզա» պանսիոնը» (1935), «Հերոսական տոնավաճառ» (1935), «Մակադամ» (1946) և այլ ֆիլմեր:

«Օսկար» մրց. (1936):

ՖԵՅԴԻ (Feydit) Ֆրեդերիկ Արման (1908–1993), ֆրանսիացի հայագետ: ՄՄ հայկ. ճեմարանի անդամ (1937): Բանասիր. գիտ. դ-ր (1973), պրոֆ.: Տիրապետել է արևմտահայ-ին: Հեղինակ է «Հայոց լեզվի քերականություն. արևմտյան խոսվածք» (1935), «Հայոց լեզվի ձեռնարկ (արդի արևմտահայերեն)» (1948), «Հայ ժողովրդական դյուցազնավեպը» (1957), «Խոհեր ս. Մեսրոպի այբուբենի մասին...» (1964, 2-րդ վերամշկ. հրտ.՝ 1982), «Դասական հայերենի բայական համակարգը» (1969), «Դասական հայերենի հոլովական համակարգը» (1976) աշխ-ների, նաև հայագիտ. հոդվածների: Ֆրանս. է թարգմանել «Սասունցի Դավթի» համահավաք ընագիրը (1964), Ե. Օտյանի «Ընկեր Բ. Փանջունի» երգիծավեպի առաջին գիրքը («Ի Ծապլվար», 1961):

ՖԵՅԽՈՒԱ, մրտազգիների ընտանիքի թփերի և ծառերի ցեղ: Ունի 2 տեսակ: Աշակվում է սելովա Ֆ.՝ Միջերկրածովայքում, Հնդկաստանում, ԱՄՆ-ում, Անդրկովկասում և այլուր: Պտուղն օգտագործում են սննդի մեջ: Պատրաստում են մրգային ըմպելիքներ, ալկոհոլ. խմիչք, մուրաբա, կոմպոտ ևն:

ՖԵՅԽՏՎԱՆԳԵՐ, Ֆոյխտվանգեր (Feuchtwanger), Լիոն (1884–1958), գերմանացի գրող: 1933-ից՝ Ֆրանսիայում: Հեղինակ է «Թոմաս Վենդտ» (1920) դրամատիկ. վեպի, «Հրեա Զյուսը» (1925), «Տգեղ դքսուհին» (1923), «Կեղծ Ներոնը» (1936) պատմավեպերի, «Հրեական պատերազմը» (1932), «Որդիները» (1935), «Կգա օրը» (1942) պատմ., «Սպասասրահ» («Հաջողություն», 1930, «Օպերմանների ընտանիքը», 1933, հայ.՝ 1941, «Արտաքսում», 1939) եռերգությունների, «Լատուենզակ եղբայրները» (1943), «Սիմոնա» (1944), «Աղվեսները խաղողի այգում» (1947–48), «Գոյա կամ...» (1952, հայ.՝ 1974), «Խենթի իմաստությունը կամ...» (1952) վեպերի: Հայ. հրատարակվել է նաև «Իսպանական բալլադ» (1972) վեպը:

ՖԵՅՆԲԵՐԳ Եվգենի Լվովիչ (1912–2005), ռուս. ֆիզիկոս-տեսաբան: ՌԳԱ ակադ. (1997): Աշխ-ները վերաբերում են ռադիոալիքների տարածմանը, ձայնագիտ-յանը, ատոմի միջուկի ֆիզիկային, տարր. մասնիկներին, տիեզ. ճառագայթներին, գիտ-յան փիլ-յանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1983):

ՖԵՅՆՄԱՆ (Feynman) Ռիչարդ Ֆիլիպս (1918–1988), ամերիկացի ֆիզիկոս-տեսաբան: Քվանտ. էլեկտրադինամիկայի հիմնադիրներից: Աշակել է ըստ հետագծի ինտեգրման մեթոդ (քվանտ. մեխանիկայում, 1948), նաև, այսպես կոչված, Ֆ-ի դիագրամների մեթոդը (դաշտի քվանտ. տեսությունում, 1949): Առաջարկել է նուկլոնի փամփշտային մոդելը (1969), քվանտավորված մրրիկների տեսությունը: Նորելյան մրց. (1965, Ս. *Տոմոնագայի* և Ջ. *Շվինգերի* հետ):

ՖԵՅՍԱԼ իբն Աբդ ալ-Ազիզ աս-Սաուդ (1906–1975), Սաուդյան Արաբիայի թագավոր՝ 1964-ից: Սպանել է թագավոր. ընտանիքի անդամը:


ՖԵՅՍԱԼԱԲԱԴ, ք. Պակիստանի Փենջաբ պրովինցիայում: Բն.՝ 2,6 մլն (2014): Տրանսպորտ. հանգույց է, բամբակագործ. շրջանի խոշոր առևտրաարդ. կենտրոն:

ՖԵՅՏ (Fyt) Յան (1611–1661), ֆլամանդացի գեղանկարիչ: Ստեղծել է դեկորատիվ-տպավորիչ նուրբ գուներանգով նատյուրմորտներ և անիմալիստ. պատկերներ («Մրգերը և թութակը», 1645, ևն): Ֆ-ի «Որսորդություն», «Շունն ու որսը» գործերը ՀԱՊ-ում են:


ՖԵՅՐԱ ԴԻ ՍԱՆՏԱՆԱ (Feira de Santana), ք. Բրազիլիայի Բանյա նահանգ-ում: Բն.՝ 612 հզ. (2014):

ՖԵՆ ՅՋԻՅԱՅ (ծ. 1942), չին գրող: Հեղինակ է «Ճիչ», «Ծաղիկներով ծածկված արահետ» (երկուսն էլ՝ 1979), «Շնորհակալություն կյանքին» (1985) վիպակների, «կուլտուրական հեղափոխության» (1966–76) ողբերգ. տարիների մասին «Հարյուր մարդ և տասը տարի» (1987) և վավերագր. պատմվածքների այլ ժողովածուների, «Կախարդական մտրակ» (1984), «Երեք ցուն երկարությամբ ոսկե լոտոսներ» (1986) պատմ. վիպակների:

ՖԵՆԱՆՏՐԵՆ, անգույն բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 101°C: Պարունակվում է քարածխային խեժում, ածանցյալները՝ որոշ ալկալոիդներում: Ֆ. պայթուցիկ նյութերի կայունարար է, ծխարար բաղադրությունների, որոշ ներկանյութերի՝ բաղադրիչ: Թունավոր է:



ՖԵՆԻԴՈՆ, բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 121°C: Ջր. լուծույթում օքսիդանում է օդի թթվածնով: Հայտածիչ նյութ է (սովորաբար՝ հիդրոքինոնի հետ) լուսանկարչության մեջ:




ՖԵՆԻԼԱԼԱՆԻՆ, արոմատիկ ամինաթթու: Օրգանիզմներում՝ սպիտակուցների բաղադրության մեջ գոյություն ունի ազատ վիճակում, փոխարկվում է թիրոզին ամինաթթվի: Անփոխարինելի ամինաթթու է: Ֆ-ի ի ծնե փոխանակության խանգարումը մարդու օրգանիզմում հանգեցնում է մտավոր հետամնացության:

ՖԵՆԻԼԿԵՏՈՆՈՒՐԻԱ, ֆենիլպիրոխաղողաթթվական *ակակամտություն*, Ֆելինգի հիվանդություն, *ֆենիլալանինի* փոխանակության խանգարում. դրսևորվում է ֆիզ. և մտավոր զարգացման հապաղումով, շարժողության, մկան. տոնուսի խանգարումներով (հիպերկինեզներ, դիսկինեզներ): Ախտորոշումը՝ Ֆելինգի փորձը նորածինների մոտ: Բուժումը՝ ֆենիլալանինի պարունակության սահմանափակումով բուժ. սնունդ (կենդ. ծագման մթերք): Ժառանգվում է ըստ աուտոսոմառեցեսիվ. տիպի: Առաջինը նկարագրել է (1934) նորվեգացի բժիշկ Ի. Ֆելինգը:


ՖԵՆՆ (Fenn) Ջոն (1917–2010), ամերկացի ֆիզքիմիկոս: Աշակել է (1984) կենսամոլների հետազոտման մասս-սպեկտրաչափ. մեթոդ՝ էլեկտրացրման (էլեկտրասփրեյի) միջոցով փափուկ (առանց դրանց կառուցվածքը քայքայելու) իոնացման օգտագործմամբ: Նորելյան մրց. (2002, Կ. *Տանակայի* հետ):

ՖԵՆՈԹԻԱԶԻՆ, բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 188°C: Օգտագործվում է որպես միջատասպան, հակաճիճվային միջոց: Ֆ-ի ածանցյալները ներկանյութեր և դեղամիջոցներ են:



ՖԵՆՈԼ, կարբոլաթթու՝ C_6H_5OH, անգույն բյուրեղներ են, օդում ստանում են վարդագույն երանգ, $t_{հալ.}$՝ 40,8°C: Հումք է սինթետիկ խեժերի, ներկանյութերի, պեստիցիդների, դեղանյութերի, ՄՄՆ-երի արտադր-յան համար, կիրառվում է

նաև վարակազերծման նպատակով: Թունավոր է, մաշկի վրա ընկնելիս առաջացնում է այրվածք: Ֆ-ում հիդրօքսիլ խմբի ջրածնի ատոմի մետաղի ատոմով տեղակայման արգասիքները, օր.՝ ArONa (Ar-ը՝ C_6H_5 կամ այլ արոմատիկ տեղակալիչներ), կոչվում են ֆենոլատներ: Բյուրեղ. նյութեր են, կիրառվում են օրգ. սինթեզում և որպես պոլիմերման կատալիզորդներ:



ՖԵՆՈԼՄՐՋՆԱԼԴԵՀԻԴԱՅԻՆ ԽԵԺԵՐ, ֆենոլի և մրջնալդեհիդի պոլիկոնդենսման արգասիքներ, մածուցիկ հեղուկներ են կամ պինդ նյութեր: Պնդացած Ֆ. խ. ունեն էլեկտրամեկուսիչ և մեխ. հատկություններ: Կիրառվում են ֆենոպլաստների, սոսինձների, լաքաներկային նյութերի, հերմետիկների արտադրությունում: Տես նաև ***Նովոլաք, Ռեզիտ, Ռեզոլ***:

ՖԵՆՈԼՈԳԻԱ (< հուն. phainomena – երևույթ և *…լոգիա*), գիտ-յուն կենդանի բնության տարեշրջ. երևույթների մասին. գրանցում և ուսումնասիրում է հիմնականում բուս. և կենդ. աշխարհներում տեղի ունեցող փոփոխությունները, որոնք պայմանավորված են տարվա եղանակների փոփոխություններով և եղանակ. պայմաններով, օր.՝ տարբեր բույսերի ծաղկման, թռչունների չվադարձի և չուի ժամկետները:

ՖԵՆՈԼՖԹԱԼԵԻՆ, 3,3-*բիս*-(4-հիդրօքսիֆենիլ) ֆտալիդ, անգույն, անհամ, անհոտ բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 277–279°C: Ինդիկատոր է վերլուծ. քիմիայում (Ֆ-ի չեզոք և թթվային լուծույթներն անգույն են, հիմնայինը՝ մորեգույն): Բժշկության մեջ օգտագործվում է որպես լուծողական (պուրգեն):

ՖԵՆՈՄԵՆ (հուն.՝ phainomenon – ներկայացող, երևացող), 1. արտասովոր, բացառիկ երևույթ կամ փաստ: 2. Փիլ. հասկացություն, որը նշանակում է զգայական ճանաչողությամբ, փորձով տրված երևույթ՝ ի հակադրություն բանականությամբ հասանելի *նոումենի*, որը Ֆ-ի հիմքն է, էությունը:

ՖԵՆՈՄԵՆԱԼԻԶՄ, փիլ. ուսմունք, որն իմացության անմիջական առարկա է համարում *ֆենոմենը*: Ֆ. բնորոշ է Ջ. *Բերկլիի*, մախիզմի ուսմունքներին:

ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱ (հուն. բառացի՝ ուսմունք *ֆենոմենների* մասին), 1. փիլ. գիտակարգ, որը յուրովի է մեկնաբանվել փիլ-յան պատմության ընթացքում, գիտ-յուն, որը քննադատել է զգայական իմացությունը (Ի. Լամբերտ, Ի. Կանտ), ուսմունք փիլ-յան կայացման մասին, գիտակցության ձևերի պատմ. ուսումնասիրություն (Գ. Հեգելի «Ոգու ֆենոմենոլոգիա»), որպես հոգեբ-յան մի մաս, որը նկարագրում է հոգեկան երևույթները (Ֆ. Բրենտանո, Ա. Մայնոնգ) ևն: 2. Ռեելիստ. փիլ. ուղղություն, որի սկզբունքները XX դ-ի սկզբին ձևակերպել է Է. *Հուսերլը*: Ֆ-ի խնդիրը ֆենոմենոլոգ. ռեդուկցիայի (էպոխե) ճանապարհով գիտակցության սկզբն. փորձի բացահայտումն է: Ֆ. էկզիստենցիալիզմի և ժամանակակից փիլ-յան այլ ուղղությունների հիմքերից է:

ՖԵՆՈՊԼԱՍՏՆԵՐ, գլխավորապես *ֆենոլմրջնալդեհիդային խեժերի* հիմքով պլաստմասսաներ: Արտադրվում են մամլափոշու (լցանյութը՝ փայտալյուր, կաոլին, գրաֆիտ ևն), թերթավոր (թուղթ, գործվածքներ) և գազալցված (փրփրաֆենոպլաստներ) պլաստիկների, վոլոկնիտների (կտրտած մանրաթելեր) ձևերով: Կիրառվում են որպես կառուցվածք., էլեկտրատեխ., շփական, հակաշփական նյութեր:

ՖԵՆՏԵՐ Բորիս Ալեքսանդրովիչ (1916–1960), բալետի ռուս. արտիստ, բալետմայստեր: ՌԽՖՍՀ ժող. արտիստ (1957): 1936–56-ին՝ Լենինգրադի Փոքր թատրոնի արտիստ (1945–53-ին՝ գեղ. ղեկ., 1953–56-ին՝ գլխ. բալետմայստեր), 1956–60-ին՝ Լենինգրադի ՕՔԹ-ի գլխ. բալետմայստեր (Մ. Ի. Չուլակիի «Պատանեկություն», 1949, Վ. Պ. Սոլովյով-Սեդոյի «Տարաս Բուլբա», 1955, ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1948, 1950):

ՖԵՈԴԱԼԻԶՄ, ***ավատատիրություն*** (ֆրանս.՝ féodalite), եզրույթն առաջացել է Ֆրանսիայում XVII դ-ում և լայնորեն տարածվել ֆրանս. հեղ-յան (XVIII դ.) շրջանում. XVIII դ-ի վերջ – XIX դ-ի սկզբին նշանակել է «հին կարգեր» (բացարձակ միապետություն, ազնվականության տիրապետություն): Մարքսիզմը Ֆ. դիտարկել է որպես սոցիալ-տնտ. հասարակարգ, որը նախորդել է կապիտալիզմին:

Ժամանակակից պատմագիտ-յունը Ֆ. դիտարկում է որպես սոցիալ. համակարգ, որը գոյություն է ունեցել միայն Արմ. և Կենտր. միջնադար. Եվրոպայում: Ֆ-ի հիմքում տիրոջ և վասալի, հողատիրոջ ու բատրակի միջանձնային հարաբերություններն են, բնորոշ են օրենքով ամրագնդված քաղքենահիրավ. անհավասարությունը և ասպետ. զինվ. կազմ-յունը: Ֆ-ի գաղ. և բարոյական հիմքը քրիստոնեությունն էր, որն էլ պայմանավորել է միջնադար. մշակույթի բնույթը:

Ֆ. ձևավորվել է V–IX դդ.-ում, երբ բարբարոսները գրավել են Հռոմ. կայսրությունը: Ծաղկման շրջանում (XII–XIII դդ.) տնտեսապես և քաղաքականապես ամրապնդվել են քաղաքները և քաղաք. բնակչությունը, ձևավորվել դասային-ներկայացուցչ. ժողովները (Անգլիայում՝ պառլամենտ, Ֆրանսիայում՝ գլխ. նահանգներ, ևն), քաղքենիական միապետությունն ստիպված է եղել հաշվի նստել ոչ միայն վերնախավի, այլև մյուս դասերի շահերի հետ: Քաղաք. տնտ-յան զարգացումը քայքայել է ազնվականության գերիշխանության բնամթեր. հիմքերը, իսկ հաս-յան ազատամտության աճն առաջացրել է հեռետիկոսության հակում: Ռեֆորմացիայի ժամանակ (XVI դ.) բողոքականությունն իր նոր էթիկայով ու արժեհամակարգով նպաստել է կապիտալիստ. տիպի ձեռնարկատիր-գործունեության զարգացմանը: XVI–XVII դդ-ի հեղ-յունները նշանավորել են Ֆ-ի ավարտը:

Հայաստանում ավատատիր. կացութաձևն արտադր-յան մեջ հիմն. եղանակ է դարձել III դ-ում, երբ հողերը շնորհվել են ոչ թե որպես «Հայրենիք», այլ՝ պարգևական, որի հետևանքով ազատ շինականն ընկել է ֆեոդալ. կախման մեջ: Ժամանակի ընթացքում խորացել է շինականների կախվածությունը տերերից: Նախարար. Հայաստանում յուրաքանչյուր տիրույթ ժառանգ. սկզբունքով գլխավորել է հանրային-իրավ. իշխանությամբ օժտված «տերը» կամ «նախարարը»՝ արքայից արքայի վասալը, որը հավաքել է հարկերը, լուծել դատ. հարցերը, ունեցել իր զորքը, տոհմ. զինանշանն ու դրոշը:

IX դ-ի 2-րդ կեսին վերականգնվել է հայկ. ավատ. պետականությունը (Բագրատունիների թագավորությունը) և Հայաստանը թևակոխել է զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջան (IX–XIII դդ.): Ի հայտ են եկել ավատատիր. խոշոր տիրույթներ, կազմավորվել է ավատատիր. մասնատիր. խոշոր կալվածք, որի վրա հողատերերը և վանքերը վարել են սեփական տնտ-յուն: Երկրում Ֆ-ի բնականոն զարգացումը խաթարել են թուրքերի ու մոնղոլ-թաթարների ավերիչ հարձակումներն ու տիրապետությունը: Իսկ Արլ. Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո 1840–50-ական թթ-ին խորացել է ավատատիր. հարաբերությունների ճգնաժամը, աշխուժացել են քաղաք. կյանքը, արհեստներն ու առևտուրը, աստիճանաբար անցում է կատարվել կապիտալիստ. հարաբերությունների:

ՖԵՈԴՈՍԵՎ, Վսեվոլոդ Իվանովիչ (1916–1991), ռուս. մեխանիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1979): Սոց. աշխ. հերոս (1986): Աշխ-ները վերաբերում են մեծ տեղաշարժերի տեսությանը և առաձգ. համակարգերի կայունությանը: Լենինյան (1960), ԽՍՀՄ Պետ. (1976) մրց-ներ:

ՖԵՈԴՈՐ ԱԼԵՔՍԵԵՎԻՉ (1661–1682), Ռուսաստանի ցար՝ 1676-ից՝ Ռոմանովների հարստությունից: ***Ալեքսեյ Միխայլովիչ*** ցարի և կայսրուհի Մ. Ի. Միլոսլավսկայայի որդին: Ներմուծել է ծխահարկը (1679), լուծարել է պաշտոնակարգությունը (1682): 1678-ին անցկացրել է բնակչության մարդահամար, 1681-ին Բախչիսարայում հաշտության պայմանագիր է կնքել Օսմ. կայսրության հետ: Նրա նախաձեռնությամբ հիմնադրվել է Սլավոն-հուն-լատ. ակադ-ը:

ՖԵՈԴՈՐՈՎ, Ալեքսեյ Ֆեոդորովիչ (1901–1989), ռուս ռազմ. և կուս. գործիչ: ՀՄՊ-ի ժամանակ՝ պարտիզան. շարժման կազմակերպիչներից: Գեն-մայոր (1943): ԽՄ հերոս (1942, 1944): 1938-ից՝ Ուկրաինայի Կ(բ)Կ Զեռնիգովի, 1943–44-ին՝ Վոլինի մարզկոմների 1-ին քարտուղար, Չեռնիգով-Վոլինի պարտիզան. միավորման հրամ. (ջոկատներում կռվել են նաև հայ մարտիկներ):

ՖԵՈԴՈՐՈՎ, Եվգենի Կոնստանտինովիչ (1910–1981), ռուս երկրաֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1960): ԽՄ հերոս (1938): 1937–38-ին աշխատել է «Հյուսիսային բևեռ-1» լողացող կայանում:

ՖԵՈԴՈՐՈՎ, Եվգենի Պետրովիչ (1911–1993), ռուս ռազմ. գործիչ: Ավիացիայի գեն-մայոր (1957): ԽՄ հերոս (1940, 1945): Ծառայել է հեռառմբակոծիչ ավիացիայում: Խորհրդա-ֆինն. պատերազմի ժամանակ կատարել է 24 մարտ. թռիչք, ՀՄՊ-ի տարիներին՝ 178:

ՖԵՈԴՈՐՈՎ, Սերգեյ Պետրովիչ (1869–1936), ռուս. վիրաբույժ: Ուրոլոգիայի հիմնադիրը Ռուսաստանում: ՌԽՖՍՀ գիտ. վաստ. գործիչ (1928): Աշխ-ները վերաբերում են լեղուղիների վիրաբուժությանը, նյարդավիրաբուժությանը ևն: Առաջիններից է Ռուսաստանում կիրառել հետազոտման ընդերադիտ. մեթոդը:

ՖԵՈԴՈՐՈՎ, Սվյատոսլավ Նիկոլաևիչ (1927–2000), ռուս. ակնաբույժ-վիրաբույժ: ՌԲԳԱ թղթ. անդամ (1982), ՌԳԱ ակադ. (1995): Սոց. աշխ. հերոս (1987): ՌԴ «Աչքի միկրովիրաբուժություն» միջճյուղ. գիտատեխ. համալիրի կազմակերպիչ և տնօրեն (1986-ից): Աշխ-ները վերաբերում են աչքի միկրովիրաբուժությանը:

ՖԵՈԴՈՐՈՎ, Վասիլի Դմիտրևիչ (1918–1984), ռուս բանաստեղծ: Հեղինակ է

«Վաճառված Վեներան» (1958), «Յոթերորդ երկինք» (1959–68), «Դոն Ժուանի ամուսնությունը» (1977) պոեմների, բանաստեղծությունների, պատմվածքների ու վիպակների ժող–ների: ՌԽՖՍՀ (1969), ԽՍՀՄ (1979) Պետ. մրց–ներ:

ՖԵՈԴՈՐՈՎ, Վլադիմիր Գրիգորևիչ (1874–1966), ինքնաշխատ հրաձգ. զենքի ռուս կոնստրուկտոր: Շարտարագիտատեխ. ծառայության գնդ–լեյտ. (1943): Աշխ. հերոս (1928): Այդ զենքի վերաբերյալ առաջին ռուս. աշխ–յան հեղինակը (1907): Ստեղծել է ինքնաձիգը (1916):

ՖԵՈԴՈՐՈՎ, Վլադիմիր Պավլովիչ (1915–1943), ռուս փորձարկող օդաչու: ԽՍՀՄ–ում առաջինն է փորձարկել հեղուկ. հրթիռ. շարժիչով (ՌՊ–318) հրթիռաճախրաթիռը, Պ. Օ. *Սուխոյի* ԿԲ–ի մխոցային կործանիչ–ները և այլ թռչող սարքեր: Զոհվել է ինքնաթիռի փորձարկման ժամանակ:

ՖԵՈԴՈՐՈՎԱ, Զոյա Ալեքսեևնա (1909–1981), ռուս. կինոդերասանուհի: ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1965): Նկարահանվել է «Ընկերուհիներ», «Երաժշտական պատմություն», «Ռազմաճակատային ընկերուհիներ», «Հարսանիք», «Հարսանիք Մալինովկայում», «Մոսկվան արցունքների չի հավատում» և այլ ֆիլմերում: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1942):

ՖԵՈԴՈՐՈՎՍԿԻ Ֆեոդոր Ֆեոդորովիչ (1883–1955), ռուս. բեմանկարիչ: ԽՍՀՄ ժող. նկարիչ (1951): ԽՍՀՄ Գեղարվ–ի ակադ–ի ակադ. (1947): Մոսկվայի Մեծ թատրոնի գլխ. նկարիչ (1927–29 և 1947–1953): Զգտել է հերոսաէպիկ. թեմաների, տոն. գույների (Մ. Պ. Մուսորգսկու «Խովանշչինա», օպերա, 1950): ԽՍՀՄ Պետ. մրց. (1941, 1943, 1949, 1950, 1951):

ՖԵՈԿՏԻՍՏՈՎ, Լև Պետրովիչ (1928–2002), ռուս. ֆիզիկոս: ՌԳԱ ակադ. (2000): Սոց. աշխ. հերոս (1966): Աշխ–ները վերաբերում են միջուկ. ֆիզիկային և տեխնիկային: Լենինյան (1958), ԽՍՀՄ Պետ. (1968) մրց–ներ:

ՖԵՈԿՏԻՍՏՈՎ, Կոնստանտին Պետրովիչ (1926–2009), ռուս. տիեզերագնաց օդաչու (1964), տիեզերանավերի կոնստրուկտոր: ԽՄ հերոս (1964): Տեխ. գիտ. դ–ր (1967): Տիեզ. թռիչք կատարած (1964) առաջին քաղաքաց. մասնագետը. թռիչքի տևողությունը՝ 1 օր 17 *ր*: Լենինյան (1966), ԽՍՀՄ Պետ. (1976) մրց–ներ:

ՖԵՈՖԱՆ ՊՐՈԿՈՊՈՎԻՉ (1681–1736), ռուս պետ. և եկեղեց. գործիչ, գրող: Պետրոս I–ի զինակիցներից: Հեղինակ է «Վլադիմիր» (1705), «Խոսք իշխանության և ցարական պատվի մասին» (1718) քարոզների, ինչպես նաև «Հոգևոր կանոնակարգ» (1721) եկեղեց. հրապարակախոս. աշխ–յան, բանաստեղծությունների (ռուս., լատ., լեհ.) և այլ գործերի:

ՖԵՈՖԻԼՈՎ, Պյոտր Պետրովիչ (1915–1980), ռուս ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1964): Աշխ–ները վերաբերում են քվանտ. օպտիկային, լազեր. բյուրեղների ստեղծմանը, բևեռացված լյումինեսցենտմանը: Հայտնաբերել է կոոպերատիվ զգայունացված լյումինեսցենտման երևույթը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949, 1975):

ՖԵՌԱՐԻ (Ferrari) Լուդովիկ (1522–1565), իտալացի մաթեմատիկոս: Հայտնաբերել է 4–րդ աստիճանի հանրահաշվ. հավասարումների լուծման եղանակ:

ՖԵՌԲԵՆՔՍ (Fairbanks) Դուգլաս (Դուգլաս Էլթոն Թոմաս Ուլման, 1883–1939), ամերիկացի կինոդերասան: Ամերիկ. կինոակադ–ի առաջին նախագահը (1927–ից): «Կրկնակի հոգսեր», «Ամերիկյան արիստոկրատիա», «Զորոյի նշանը», «Ռոբին Հուդ», «Բաղդադի գողը», «Սև ծովահենը», «Դոն Ժուանի անձնական կյանքը» և այլ ֆիլմերում ստեղծել է բարեհոգի, լավատես. էներգիայով լի կերպարներ: 1917–ից իր ֆիլմերի պրոդյուսերն է, ապա՝ «Յունայթեդ արթիստ» կինոֆիրմայի հիմնադիրներից: «Օսկար» հատուկ մրց. (1939):

ՖԵՌԻՄԱԳՆԻՍ, ֆեռիմագնիս. հատկություններով նյութ: Ֆ–ներ են մի շարք կարգավորված մետաղ. համաձուլվածքներ, տարբեր օքսիդներ, նաև՝ *ֆեռիտները*:

ՖԵՌԻՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՌԵԶՈՆԱՆՍ, հաստատուն մագնիս. դաշտում *ֆեռիմագնիսի*՝ էլեկտրամագնիս. ճառագայթման էներգիայի ընտրողաբար կլանումը ռադիո– և ԵԿ տիրույթներում: Ֆ. ռ. կապված է ֆեռիմագնիսի մագնիս. ենթացանցերի մագնիսացածության վեկտորների *պրեցեսիայի* հետ:

ՖԵՌԻՄԱԳՆԻՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, նյութի մագնիսակարգավորված վիճակ, երբ բյուրեղում գոյություն ունեցող մագնիս. ենթացանցերի մագնիս. մոմենտները փոխադարձաբար հավասարակշռված չեն և ստեղծում են ինքնաբեր մագնիս. մոմենտ՝ $M_s \neq 0$ (չհավասարակշռված հակաֆեռոմագնիսականություն): Արտաքին մագնիս. դաշտում *ֆեռիմագնիսը* մագնիսանում է *ֆեռոմագնիսի* նման: Որոշ ֆեռիմագնիսների համար գոյություն ունի հավասարակշռման ջերմաստիճան. կետ, որտեղ $M_s = 0$: *Կյուրիի կետից* բարձր ջերմաստիճաններում Ֆ. անհետանում է:

ՖԵՌԻՏ (լատ.՝ ferrum – երկաթ) **մետաղագիտության մեջ**, երկաթածխածն. համաձուլվածքների՝ ածխածնի պինդ լուծույթների, նաև լեգիրող տարրերի կառուցվածք. բաղադրիչ α–երկաթում: Առաջանում է γ–α փոխակերպումներում: Ածխածնի պինդ լուծույթը δ–երկաթում երբեմն անվանում են բարձրջերմաստիճան. Ֆ.:

ՖԵՌՆԱՆԴԵԼ (Fernandel, Ֆեռնան Կոնտանդեն, 1903–1971), ֆրանսիացի դերասան: «Կազիմիր» (1950), «Ալի–Բաբան և քառասուն ավազակները» (1954) ֆիլմերում դրսևորած գրոտեսկ. կոմիզմն առավել բացահայտել է «Պարահանդեսային նոթատետր», «Օրենքն օրենք է», «Սատանան և տասը պատվիրանները», «Հոր ուղևորությունը» և այլ կինոնկարներում՝ ֆարսի և դրամատիզմի զուգորդումով: Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» շքանշան (1952):

ՖԵՌՆԱՆԴԵՍ (Fernández) Էմիլիո (1904–1986), մեքսիկացի կինոռեժ., դերասան: Նկարահանել է «Մարիա Կանդելարիա» (1944), «Ռիո Էսկոնդիդո» (1948), «Պանչո Վիլլայի հավատարիմ զինվորը» (1967), «Չոկա» (1974), «Կարմիր գոտի» (1975) և այլ ֆիլմեր:

ՖԵՌՆԱՆԴԵՍ ԴԵ ԼԻՍԱՐԴԻ (Fernández de Lizardi) Խոսե Խոակին (1776–1827), մեքսիկացի գրող: Մեքսիկ. ազգ. արձակի հիմնադիրը: Հեղինակ է «Պերիկիլիո Սառնիենտո» (հրտ.՝ 1830–31) լատինաամերիկ. առաջին վեպի, «Կիխոտիտան և նրա զարմուհին» (հրտ.՝ 1831–32) մանկավարժ. թեմայով վեպի, «Մեքսիկացի մտածողի առակները» (1817) ժող–ի, «Զգայուն նեգրը» (1825) պիեսի, «Դոն Կատրին անբանը» (հրտ.՝ 1832) վիպակի:

ՖԵՌՆԱՆԴՈ I (Ֆերդինանդ) Մեծ (Fernando, 1016/18–1065), 1035–ից՝ Կաստիլիայի, 1038–ից՝ Լեռնի թագավոր: Միավորել է Կաստիլիան և Լեռն, միացրել է Նավառայի որոշ հողեր (1054): Հաջողությամբ պատերազմել է արաբների դեմ, վերանվաճել Լամեգա (1057), Կոիմբրա (1064) ք–ները. գերիշխանությունը ճանաչել են մի քանի արաբ էմիրներ (Տոլեդոյի, Սարագոսայի ևն):

ՖԵՌՆԱՆԴՈ II (Ֆերդինանդ) **ԱՐԱԳՈՆԱՑԻ**, **Ֆեռնանդո Կաթոլիկ** (1452–1516), 1468–ից՝ Սիցիլիայի, 1474–1504–ին՝ Կաստիլիայի (որպես Իզաբելա I–ի ամուսին), 1504–ից՝ Նեապոլի թագավոր: Արագոնի Խուան II թագավորի որդին: Իր անձն. ունիայով միավորել է Արագոնը և Կաստիլիան: Գրավելով Գրանադան (1492)՝ ավարտին է հասցրել *Ռեկոնքիստան*: Սահմանել է ինկվիզիցիա, Իսպանիայից արտաքսել է հրեաներին, Կատալոնիայում վերացրել գյուղացիների անձն. կախվածությունը, աջակցել է Ք. *Կոլումբոսի* արշավանքներին:

ՖԵՌՆԱՆԴՈ III (Ֆերդինանդ) Սուրբ (1199/1201–1252), 1217–ից՝ Կաստիլիայի, 1230–ից՝ Լեռնի թագավոր: Գահի համար պայքարել է հոր՝ Ալֆոնս IX–ի դեմ: Նրա մահից հետո միավորել է երկու թագավորությունները: Իրականացրել է հաջող արշավանքներ Անդալուզիա, նվաճել է Կորդովան (1236) և Սևիլիան (1248): Սրբադասվել է 1671–ին:

ՖԵՌՆԱՆԴՈ IV (Ֆերդինանդ, 1285–1312), Կաստիլիայի և Լեռնի թագավոր՝ 1295–ից: Մինչև 1301–ը երկիրը կառավարել է մայրը՝ Մարինա դե Սոլինան: 1301–ին Բոնիֆացիոս VIII պապը ճանաչել է գահաժառանգի՝ նրա օրինական իրավունքը: 1309–ին նվաճել է Ջիբրալթարը:

ՖԵՌՆԱՆԴՈՒ (1345–1383), Պորտուգալիայի թագավոր՝ 1367–ից: Պեդրու I–ի որդին, Բուրգունդյան հարստության վերջին ներկայացուցիչը՝ Պորտուգալիայի գահին: Նպաստել է արտաքին առևտրի, նավատորմի զարգացմանը: Արական ժառանգներ չի ունեցել, որն էլ առիթ է դարձել, որպեսզի իշխանության գա՝ նոր՝ Ավիայան հարստությունը (1385–ից):

ՖԵՌՈ, **Դալ Ֆեռո** (Dal Ferro), Սցիպիոն (1465–1526), իտալացի մաթեմատիկոս: Ֆ–ի անվան հետ են կապում բերված խորանարդ հավասարման լուծման կանոնի հայտնաբերումը:

ՖԵՌՈ... (< լատ. ferrum – երկաթ), բարդ բառերի մաս. նշանակում է երկաթե, երկաթին վերաբերող (օր.՝ ֆեռոհամաձուլվածքներ):


ՖԵՌՈՀԱՄԱՁՈՒԼՎԱԾՔՆԵՐ, երկաթի համաձուլվածքներ այլ մետաղների (Cr, Si, Mn, Ti ևն) հետ, որոնք օգտագործում են հիմնականում պողպատի թթվածնազերծման և լեգիրման համար (օր.՝ ֆեռոքրոմ, ֆեռոսիլիցիում ևն): Պայմանականորեն Ֆ–ի շարքին են դասում նաև որոշ համաձուլվածքներ, որոնք երկաթ պարունակում են միայն խառնուրդների (սիլիցիումմանգան ևն) տեսքով, և խառնուրդների փոքրագույն քանակություն ունեցող մետաղներ և ոչ մետաղներ: Ֆ. ստանում են հանքերից կամ խտանյութերից՝ էլեկտրավառարաններում կամ հալքի հորերում (ինոց):

ՖԵՌՈՄԱԳՆԻՍ, ֆեռոմագնիս. հատկություններով նյութեր: Ֆ–ներ են Fe, Co, Ni, Gd, Tb, Dy, Ho, Er, Tm, նրանց համաձուլվածքներն ու միացությունները, նաև Cr, Ni, Eu և U–ի մի շարք միացություններ ոչ ֆեռոմագնիս. տարրերի հետ:

ՖԵՌՈՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՌԵԶՈՆԱՆՍ, *ֆեռոմագնիսի*՝ էլեկտրամագնիս. դաշտի էներգիայի ընտրողաբար կլանումն այն հաճախությունների դեպքում (սովորաբար՝ ռադիոտիրույթի), որոնք համընկնում են ֆեռոմագնիսի մագնիս. մոմենտի ռեզոնանս. պրեցեսիայի սեփ. տատանումների հետ: Առաջինը դիտել է ռուս ֆիզիկոս Վ. Կ. Արկադևը 1913-ին: Հաճախ հանդիպում է անհամասեռ Ֆ. ռ.՝ ԳԲՀ դաշտով գրգռված, ըստ ծավալի անհամասեռ նմուշի մագնիս. մոմենտի տատանումները: Ֆ. ռ–ի հիման վրա ստեղծվել են ԳԲՀ տիրույթի գեներատորներ և ուժեղարարներ, հաճախության փոխակերպիչներ, հզորության սահմանափակիչներ, հապաղման գծեր ևն:

ՖԵՌՈՄԱԳՆԻՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, նյութի (*ֆեռոմագնիսի*) մակրոսկոպիկ ծավալների մագնիսակարգավորված վիճակը, երբ այդ ծավալներում ատոմների (իոնների) մագնիս. մոմենտները զուգահեռ են և նույնակողմնորոշված: Այդ ծավալները՝ *դոմեններ,* օժտված են M_s մագնիս. մոմենտով (ինքնակամ մագնիսացվածություն)՝ նույնիսկ արտաքին մագնիսացնող դաշտի բացակայությամբ: Արտաքին դաշտում ֆեռոմագնիսների համար բնորոշ են մագնիսացվածության կորի ոչ գծայնությունը և մագնիս. *հիստերեզիսը*՝ գերմագնիսացման դեպքում: M_s–ի արժեքը մեծագույնն է T = 0K–ի դեպքում. ջերմաստիճանի աճման հետ M_s–ը փոքրանում է և վերածվում 0–ի՝ *Կյուրիի կետում,* որից բարձր ջերմաստիճաններում նյութը դառնում է պարամագնիսական:

ՖԵՌՈՅԵՆ, նարնջագույն բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 173°C, ունի այսպես կոչված սենդվիչանման կառուցվածք: Պոլիէթիլենի և դիենային կաուչուկների (օր.՝ բուտադիենային) ջերմակայունարար է: Ֆ–ի բացահայտումը (1951) խթանել է անցում. մետաղների π–կոմպլեքս. միացությունների քիմիայի զարգացմանը:



ՖԵՄ, ք. Մարոկկոյում, համանուն պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,1 մլն (2014): Ունի միջազգ. օդանավակայան: Խոշոր պատմամշակութ. կենտրոն է:

ՖԵՄԻՆ Իվան Իվանովիչ (1904–1991), ռուս. ռազմ. գործիչ, գեն–մայոր (1943): ԽՄ հերոս (1943, կրկնակի): ՀՄՊ–ի ժամանակ՝ մոտոհրաձգ. բրիգադի և հրաձգ. դիվիզիայի հրամ.:

ՖԵՆ (Շենշին) Աֆանասի Աֆանասևիչ (1820–1892), ռուս բանաստեղծ: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1886): Հեղինակ է «Լիրիկական պանթեոն» (1840), «Իրիկնային կրակներ» (հ. 1–4, 1883–91) քնար. ժող–ների, «Իմ հուշերը» (մաս 1–2, 1890), «Կյանքիս վաղ տարիները» (հրտ.՝ 1893) հուշագրությունների: Նրա բանաստեղծությունների հիման վրա ստեղծվել են երգեր:

ՖԵՏԻՇՈՒԹՅՈՒՆ (ֆրանս.՝ fetiche – կուռք, թալիսման), **պարաֆիլիա**, երբ սեռ. հակում առաջացնող օբյեկտն անշունչ առարկա է (ավելի հաճախ՝ կնոջ հարդարանքի պարագաները):

ՖԵՏԻՍՈՎ Վյաչեսլավ Ալեքսանդրովիչ (ծ. 1958), ռուս մարզիկ (տափօղակով հոկեյ): ԽՍՀՄ ս. վ. վ. (1978), Ռուսաստանի վ. մ. (2002): Ձմեռ. օլիմպ. խաղերի (1984, 1988), աշխարհի (1978, 1981–83, 1986, 1989, 1990), Եվրոպայի (1978, 1981–83, 1985–87, 1989, 1991), ԽՍՀՄ (1975, 1977–89) չեմպիոն: Ստենլիի գավաթի հաղթող (1997, 1998)՝ «Դետրոյտ Ռեդ Ուինգս» ակումբի կազմում: ՌԴ ֆիզկուլտուրայի և սպորտի պետ. կոմիտեի նախագահ (2002–04), Ֆիզ. կուլտուրայի և սպորտի դաշն. գործակալության ղեկ. (2004–08):

ՖԵՐ (Fert) Ալբեր (ծ. 1958), ֆրանսիացի ֆիզիկոս: Հայտնաբերել է վիթխարի մագնիսադիմադրության էֆեկտը (1988): Նոբելյան մրց. (2007, Պ. Գրյունբերգի հետ):

ՖԵՐԳԱՆԱՅԻ ՀՈՎԻՏ, Ֆերգանայի գոգավորություն, Ֆերգանա, միջլեռն. գոգավորություն Տյան Շանի և Հիսարա–Ալայան լեռն. համակարգերի միջև՝ Միջին Ասիայում՝ Ուզբեկստանում, Ղրղըզստանում ու Տաջիկստանում: Երկ.՝ մոտ 300 *կմ,* լայն.՝ մինչև 170 *կմ,* տարածքը՝ 22 հզ. *կմ*²: Երկրաշարժակտիվ շրջան է: Կան նավթի, գազի, ածխի, պղնձի, բազմամետաղների և այլ հանքավայրեր: Գլխ. գետը *Սիրդարյան* է, որի ջրերն օգտագործում են ոռոգման համար:

ՖԵՐԳՅՈՒՍՈՆ (Ferguson) Ալեքս (Ալեքսանդր Չափմեն, ծ. 1941), շոտլանդացի մարզիկ և մարզիչ (ֆուտբոլ): «Մանչեսթր Յունայթեդի» գլխ. մարզիչ (1986–2013), որի ղեկավարությամբ թիմը հաղթել է ՈՒԵՖԱ–ի չեմպիոնների լիգայում (1992, 2008), աշխարհի ակումբ. (2008), Անգլիայի (12 անգամ՝ 1993–2011) առաջնություններում և այլ մրցումներում: Անգլիայի ասպետի կոչում (1999):

ՖԵՐԴԻՆԱՆԴ I (Ferdinand, 1503–1564), Հռոմ. սրբազան կայսրության կայսր՝ 1556–ից: Ավստրիայի էրցհերցոգ՝ Հաբսբուրգների հարստությունից: Չեխիայի և Հունգարիայի առաջին թագավորը՝ 1526–ից: *Կառլ V*–ի եղբայրը:

ՖԵՐԴԻՆԱՆԴ I ԿՈԲՈՒՐԳԱՑԻ (1861–1948), Բուլղարիայի ցար՝ 1908–18–ին՝ Սաքսեն–Կոբուրգ–Գոթի հարստությունից: Նպաստել է Բուլղարիայում գերմ. ազդեցության ուժեղացմանը, նրան ներքաշել Ա.Հ.Պ–ի մեջ: Հրաժարվել է գահից և փախել Գերմանիա:

ՖԵՐԴԻՆԱՆԴ II (1578–1637), Հռոմ. սրբազան կայսրության կայսր՝ 1619–ից: Ավստրիայի էրցհերցոգ՝ Հաբսբուրգների հարստությունից: Վարել է հակաբարեփոխ. քաղ–յուն: Երեսնամյա պատերազմի (1618–48) սկզբին գլխավորել է հաբսբուրգականաթոլիկ. ճամբարը:

ՖԵՐԴԻՆԱՆԴ III (1608–1657), Հռոմ. սրբազան կայսրության կայսր՝ 1637–ից: Ավստրիայի էրցհերցոգ՝ Հաբսբուրգների հարստությունից: Նրա օրոք ավարտվել է Երեսնամյա պատերազմը (1618–48):

ՖԵՐԴԻՆԱՆԴ VII (Fernando, 1784–1833), Իսպանիայի թագավոր՝ 1808 և 1814–33–ին՝ Բուրբոնների հարստությունից: 1808–14–ին՝ գերի Ֆրանսիայում:

ՖԵՐԴՄԱՆ Դավիդ Լազարևիչ (1902/03–1970), ուկրաինացի կենսաքիմիկոս (ծագումով՝ հրեա): Ուկր. ԽՍՀ (1939), ԽՍՀՄ (1946) ԳԱ–ների թղթ. անդամ: Աշխ–ները վերաբերում են ֆոսֆոր. միացությունների փոխանակությանը, մկաններում ամոնիակի առաջացմանն ու հեռացմանը: Կենդանիների հյուսվածքներում հայտնաբերել է *գլուտամինը*:

ՖԵՐԻՆՀԻՐԻՆԳ (Vereeniging), ք. ՀԱՀ–ում՝ Վաալ գետի ափին: Բն.՝ 482 հզ. (2014): Ածխի արդյունահանման կենտրոն է: Հիմնադրվել է 1892–ին:

ՖԵՐԿԳՈՏՍ, Ֆերչգոտ (Furchgott), Ռոբերտ (1916–2009), ամերիկացի կենսաքիմիկոս: Բացահայտել է արյունատար անոթների տոնուսի անկման (ռելաքսացիա) էնդոթել. գործոնը: Լ. Իգնարոյի հետ բացահայտել է (1986), որ այդ գործոնի ակտիվ սկիզբն ազոտի օքսիդն է: Նոբելյան մրց. (1998, Լ. Իգնարոյի և Ֆ. *Մյուրադի* հետ):

ՖԵՐՄԱ (Fermat) Պիեռ (1601–1665), ֆրանսիացի մաթեմատիկոս: Վերլուծ. երկրչփյան և թվերի տեսության (*Ֆերմայի թեորեմներ*) ստեղծողներից: Աշխ–ները վերաբերում են հավանականությունների տեսությունների անվերջ փոքրերի հաշվին և օպտիկային (*Ֆերմայի սկզբունք*):

ՖԵՐՄԱՅԻ ԹԵՈՐԵՄՆԵՐ, 1. **Ֆերմայի մեծ թեորեմ**, թվերի տեսության պնդում, որի համաձայն՝ $x^n + y^n = 2^n$ հավասարումը 2–ից մեծ բնական n–ի դեպքում չունի դրական ամբողջ լուծումներ: Այս թեորեմն առաջադրած Պ. *Ֆերման* ապացույցներ չի թողել: Ֆ. թ. ապացուցել է անգլիացի մաթեմատիկոս Է. Ուայլսը 1995–ին: 2. **Ֆերմայի փոքր թեորեմ**, *թվերի տեսության* հիմն. թեորեմներից, ըստ որի՝ եթե p–ն պարզ թիվ է, իսկ a–ն՝ p–ի չբաժանվող ամբողջ թիվ, ապա a^{p-1} –1–ը բաժանվում է p–ի: Թեորեմն առանց ապացուցման ձևակերպել է Պ. Ֆերման, առաջինը ապացուցել է Լ. *Էյլերը*:

ՖԵՐՄԱՆՅԱՆ Գոհար Արամի (1899–1958), նկարչուհի: Ֆ–ի 1930–ական թթ–ի գործերում նկատելի է ուսուցչի՝ Կ. *Պետրով–Վոդկինի* ազդեցությունը («Նագիկը ընթերցելիս», 1929, «Բամբակի շարքացան», 1931, «Արդուկող կինը», 1933), ուշագրավ են նաև «Նատյուրմորտ: Միգեր» (1945), «Հացթուխ կանայք» (1957) և այլ գործեր:

ՖԵՐՄԵՆՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, *էնզիմոլոգիա,* կենսաքիմիայի բաժին. ուսումնասիրում է *ֆերմենտները* և նրանցով կատալիզվող ռեակցիաները:

ՖԵՐՄԵՆՏԱՅԻՆ ԿԱՏԱԼԻԶ, կենսակատալիզ, կենդանի բջիջներում քիմ. ռեակցիաների արագացումը *ֆերմենտներով*: Ֆ. կ. բնորոշվում է բացառիկ բարձր արդյունավետությամբ (ռեակցիայի արագության մեծացումը 10^{10}–10^{13} անգամ), ընտրողականությամբ և կառավարելիությամբ, այսինքն՝ կախված օրգանիզմի պահանջից ֆերմենտների ակտիվության փոփոխություններով: Ֆ. կ–ի այդ առանձնահատկությունները պայմանավորված են հիմնականում ֆերմենտների մոլ–ների բարդ տարած. կառուցվածքով:

ՖԵՐՄԵՆՏՆԵՐ (լատ.՝ fermentum – մակարդիչ), **Էնզիմներ**, կենսբ. կատալիզորդներ, որոնք պարունակվում են բոլոր կենդանի բջիջներում: Իրականացնում են նյութերի փոխակերպումներն օրգանիզմում՝ դրանով ուղղորդելով և կարգավորելով նյութափոխանակությունը: Քիմ. բնույթով *ապիտակուցներ* են: Ֆ. օպտիմալ ակտիվություն ունեն pH–ի որոշակի արժեքների դեպքերում, հաճախ՝ անհրաժեշտ կոֆերմենտների և համագործոնների առկայության և արգելակիչների (ինհիբիտորներ) բացակայության դեպքերում: Ֆ. ստորաբաժանվում են 6 դասի՝ օքսիռեդուկտազներ, տրանսֆերազներ, հիդրոլազներ, լիազներ, իզոմերազներ և լիգազներ: Ֆերմենտ. պատրաստուկներն օգտագործվում են բժշկության, սննդի և թեթև արդ–յան մեջ:

ՖԵՐՄԻ (Fermi) Էնրիկո (1901–1954), իտալացի ֆիզիկոս: Միջուկ. և նեյտրոն. ֆիզիկայի ստեղծողներից, քվանտ. էլեկտրա–

դինամիկայի հիմնադիրներից: ԽՍՀՄ ԳԱ արտ. թղթ. անդամ (1929): 1938–ից՝ ԱՄՆ–ում: Աշակել է քվանտ. վիճակագրությունը (Ֆ–Դիրակի վիճակագրություն, 1925), բետա–տրոհման տեսությունը (1934): Հայտնաբերել է (աշխատակից–ների հետ) նեյտրոններով առաջացած արհեստ. ճառագայթաակտիվությունը, նյութի մեջ նեյտրոնների դանդաղումը (1934): Կառուցել է առաջին միջուկ. ռեակտորը և առաջինը նրանում իրականացրել (02.12.1942) շղթ. միջուկ. ռեակցիա: Նոբելյան մրց. (1938): Ֆ–ի անունով է կոչվել 100–րդ քիմ. տարրը (Ֆերմիում):

ՖԵՐՄԻ, երկ–յան արտահամակարգ. միավոր, հավասար է 10^{-15} *մ*: Կոչվել է ի պատիվ Է. ***Ֆերմիի***: Օգտագործվում է տարր. մասնիկների և միջուկ. ֆիզիկայում:

ՖԵՐՄԻ–ԳԱԶ, կիսամբողջ սպինով մասնիկներից կամ քվազիմասնիկներից կազմված ***քվանտային գազ*** (օր.՝ էլեկտրոն. գազը մետաղում): T = OK դեպքում Ֆ–գ–ի մասնիկները լրացնում են բոլոր վիճակները՝ ընդհուպ մինչև գազի խտությունից կախված, այսպես կոչված, ***Ֆերմի–էներգիան***:

ՖԵՐՄԻ–ԴԻՐԱԿԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ, քվանտ. վիճակագրություն նույնական ***ֆերմիոնների*** համակարգի համար: Ֆ–Դ. վ–յանը բնորոշ է ***Պաուլիի սկզբունքը***՝ յուրաքանչյուր քվանտ. վիճակում կարող է լինել 1 մասնիկից ոչ ավելի: Կիրառվում է մետաղներում էլեկտրոն. հաղորդականության, ատոմ. թաղանթների էլեկտրոնների, ատոմ. միջուկների նուկլոնների համար ևն:

ՖԵՐՄԻ–ԷՆԵՐԳԻԱ, էներգիա, որից ցածր T = OK դեպքում ***Ֆերմի–Դիրակի վիճակագրությանը*** ենթարկվող մասնիկների կամ քվազիմասնիկների համակարգի բոլոր էներգ. վիճակներն զբաղված են, իսկ դրանից բարձր՝ ազատ:

ՖԵՐՄԻ–ՀԵՂՈՒԿ, կիսամբողջ սպինով մասնիկներից կամ քվազիմասնիկներից կազմված հեղուկ (հեղուկ ^{3}He, հաղորդականության էլեկտրոնները մետաղներում):

ՖԵՐՄԻ–ՄԱԿԵՐԵՎՈՒԹՅՈՒՆ, նույնա–էներգ. մակերևույթ, որը քվազիմպուլս. տարածության մեջ սահմանափակում է այն էներգ. վիճակների տիրույթը, որոնք զբաղված են հաղորդականության էլեկտրոններով՝ T = OK դեպքում: Ֆ–մ. մետաղների տեսության կարևորագույն հասկացություն է: Մետաղների բազմաթիվ հատկություններ (ջերմունակություն, մագնիս. ընկալունակություն, էլեկտրահաղորդականություն ևն) պայմանավորված են հիմնականում Ֆ–մ–ի մոտակայքում գտնվող էլեկտրոնների իմպուլսներով: Անվանել են ի պատիվ Է. ***Ֆերմիի***:

ՖԵՐՄԻՈՆ, ***ֆերմի մասնիկ***, կիսամբողջ սպինով մասնիկ կամ քվազիմասնիկ՝ էլեկտրոնը, պրոտոնը, նեյտրոնը ևն (նաև ***քվարկները***):

ՖԵՐՄԻՈՒՄ (Fermium), Fm, տարրերի պարբեր. համակարգի III խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 100, ակտինոիդ է: Ճառագայթաակտիվ է, կայուն իզոտոպը՝ ^{257}Fm ($T_{1/2}$ = 100,5 *և*): Ստացվել է արհեստականորեն: Անվանվել է ի պատիվ Է. ***Ֆերմիի***:

ՖԵՐՄՈՆՆԵՐ, քիմ. նյութեր, որոնք արտադրվում են կենդանիների արտազատիչ գեղձերով (կամ հատուկ բջիջներով), արտաքին միջավայր են արտազատվում նույն առանձյակներով: Ֆ. են սեռ. ատրակտանտները, տազնապի, հավաքվելու և այլ զգացողություն առաջացնող նյութեր: Ֆ. կարգավորում են միջատների խմբերի կազմը և նրա անդամների յուրահատուկ գործունեությունը: Ֆ. և նրանց քիմ. նմանակներն օգտագործում են վնասատու միջատների դեմ պայքարելու համար:

ՖԵՐՄՄԱՆ Ալեքսանդր Եվգենիևիչ (1883–1945), ռուս. երկրաքիմիկոս, երկրաքիմիայի հիմնադիրներից: ՌԳԱ ակադ. (1919): ԽՍՀՄ Պետ. մրց. (1942):

ՖԸՆՏԸՃԱԳԻ ԻՆ–ՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 1915, Լեռն. Կիլիկիայի Ֆընտըճագ, Դերեքթոյ և Քեշիֆլի գ–երի հայ բնակիչների գոյամարտը թուրք ջարդարարների դեմ: 1915–ի գարնանը Ֆընտըճագում ապաստանած մի խումբ զեյթունցիների հետ բնակիչները ջախջախել են գյուղ մտած թուրք ոստիկանների ջոկատը և խլել նրանց զենքը, հարևան՝ Դերեքթոյ և Քեշեֆլի գ–երի բնակիչների հետ նախապատրաստվել դիմադրության: Օգոստ. 1–ին թուրք. գերակշիռ ուժերը ներխուժել են գյուղ, որոնց պաշտպանները դիմադրել են մինչև իրենց վերջին շունչը: Հայերից զոհվել է 2100 մարդ, թուրք. բանակից՝ 2 հզ. զինվոր և մի քանի հզ. բաշիբոզուկներ:

Ֆ. ի. Մեծ եղեռնի տարիների հայերի գոյամարտի հերոսական էջերից է:

ՖԹԻԶԻՈՏՐԻԱ (< հուն. fthyzis – թոքախտ և iatreia – բուժում), կլինիկ. բժշկագիտության բաժին. ուսումնասիրում է տուբերկուլոզի հարուցչի ձևաբան. և կենսբ. առանձնահատկությունները, կենդանի օրգանիզմ նրա ներթափանցման ուղիները, հիվանդության զարգացման մեխանիզմները, զանազան օրգանների ախտահարումը տուբերկուլոզով, դրա ախտորոշումը, կլինիկ. ընթացքը, բուժման և առողջացման կենսընթացները: Ժամանակակից Ֆ–ից առանձնացել են ֆթիզիապեդիատրիան, ֆթիզիագինեկոլոգիան, ֆթիզիաուրոլոգիան, ֆթիզիավիրաբուժությունը, ֆթիզիաօրթոպեդիան: ՀՀ–ում հակատուբերկուլոզ. ծառայությունը կազմակերպվել է Ֆ–ի հիմնադիր Գրիգոր ***Սաղյանի*** նախաձեռնությամբ, ԵՊՀՀ–ում Ֆ. դասավանդվել է 1930–ից (Ռուբեն ***Գյանջեցյան***): Հետագա զարգացմանը նպաստել են նաև Թ. Բաբայանի, Մ. Մելքումյանի, Ի. Հակոբյանի, Հ. Աբգարյանի, Ա. Կայծակովի, Մ. Սաֆարյանի և ուր. աշխ–ները:

ՖԻՄՆԻՏՆԵՐ, ցիրկոնիումի կամ հաֆնիումի օքսիդների սինթետիկ միաբյուրեղներ: Առաջին անգամ ստացվել է (1972) ԽՍՀՄ ԳԱ ֆիզ. ինստ–ում (Физ. инст. АН СССР՝ ФИАН, այստեղից՝ անվանումը): Կիսաթանկարժեք քարեր են, օգտագործում են ոսկերչության մեջ:

ՖԻԲԻԳԵՐ (Fibiger) Յոհաննես (1867–1928), դանիացի մանրէաբան և ախտաբան: Աշխ–ները վերաբերում են փորձարար. ուռուցքաբանությանը: Նորելյան մրց. (1926):

ՖԻԲՈՆԱՉԻ, տես *Լեոնարդո Պիզացի*:

ՖԻԲՈՆԱՉԻԻ ԹՎԵՐ, 1, 1, 2, 3, 5, 8… թվային հաջորդականության տարրեր (Ֆիբոնաչիի շարք, 1202), որոնց յուրաքանչյուր հաջորդ անդամը նախորդ երկուսի գումարն է:

ՖԻԲՐԻՆ, չլուծվող սպիտակուց, որը գոյանում է ֆիբրինոգենից՝ արյան մակարդման ընթացքում: Ֆ–ի թելերը պոլիմերվելով առաջացնում են արյան շրջանառությունը դադարեցնող տրոմբի հիմքը:

ՖԻԲՐՈԲԼԱՍՏՆԵՐ (< լատ. fibra – թել և հուն.՝ blastos – ծիլ), մարդու և կենդանիների շարակց. հյուսվածքի հիմն. բջջաձևը: Առաջացնում են այդ հյուսվածքի թելերը և հիմն. նյութը, բորբոքումների ժամանակ մասնակցում վերքերի ապաքինմանը և սպիների առաջացմանը:

ՖԻԲՐՈՄԱ (< լատ. fibra – թել և ***…ոմա***), **թելուռուցք**, թելավոր միացնող հյուսվածքի բարորակ ուռուցք: Հաճախ զուգակցվում է այլ հյուսվածքների մեծացման հետ, օր.՝ մկան. (ֆիբրոմիոմա), անոթ. (անգիոֆիբրոմա), գեղձ. (ֆիբրոադենոմա): Առաջանում է մաշկի, լորձաթաղանթի վրա, ջղերում, կաթնագեղձում և արգանդում:

«ՖԻԳԱՐՕ» («Le Figaro»), ֆրանս. երգիծ. օրաթերթ (1826–ից, Փարիզ):

ՖԻԳԵՅՐԵԴՈՒ ՕԼԻՎԵՐԱ (Figueiredo Oliveira) Ժուան Բատիստա դի (1918–1999), Բրազիլիայի նախագահ՝ 1979–85–ին, գնդ.: 1969–74–ին՝ ԳԾ պետ: Թույլատրել է քաղ. կուս–յունների գործունեությունը, ընդունել նահանգապետների և քաղաքապետների ուղղակի ընտրությունների արդյունքները:

ՖԻԳՈՒՐՈՎՍԿԻ Իվան Վլադիմիրովիչ (1865–1940), ռուս. կլիմայագետ, աշխարհագետ: Աշխ–ները վերաբերում են Կովկասի կլիմաների դասակարգման և կլիմ. ու ֆիզիկաաշխարհագր. շրջանացման հարցերին: Հեղինակ է նաև «Հյուսիս–արևելյան Հայաստանի և հարևան շրջանների կլիմայական ակնարկ» (1920) աշխ–յան:

ՖԻԴԱՅԻ, **ֆեդայի** (արաբ.՝ զոհ, հանուն գաղափարի նահատակվող մարդ), XIX դ–ի վերջին քառորդին և XX դ–ի սկզբին Արմ. Հայաստանում, Կիլիկյան Հայաստանում և Օսմ. կայսրության հայաբնակ վայրերում թուրք. տիրապետության դեմ պայքարող հայ մարտիկների ընդհանուր անունը: Ֆ–ների շարժումը, սկզբնապես լինելով ընդվզում, աստիճանաբար վերածվել է թուրք. կառ–յան հայահալած քաղ–յան դեմ ազգ–ազատագր. պայքարի (տես *Հայ հայդուկային շարժում*):

ՖԻԴԵ (FIDE – Fédération internationale des échecs), Շախմատի միջազգ. միություն կազմ–յան ֆրանս. անվան համառոտագրությունը:

ՖԻԴԻԱՍ (մ. թ. ա. մոտ 500–մոտ 432), հույն քանդ., ճարտ., բարձր դաս. արվ–ի խոշոր վարպետներից: Ղեկավարել է Աթենքի Ակրոպոլիսի Պարթենոնի տաճարի (մ. թ. ա. 438–432) շին–յունը, որի ճարտ–յան և քանդ–յան համադրությունն արվ–ի կատարյալ նմուշներից է: Հեղինակ է Աթենաս Պրոմաքոսի (մ. թ. ա. մոտ 460, բրոնզ, Ակրոպոլիս), Զևսի (Օլիմպիա) և Աթենաս Պարթենոսի (Աթենք, երկուսն էլ՝ ոսկի, փղոսկր) հսկա արձանների (չեն պահպանվել): Ֆ–ի ստեղծագործությունը համաշխ. արվ–ի բարձրագույն նվաճումներից է:

ՖԻԶԱՀԻ (Կարապետյան Գևորգ, 1847–1918), աշուղ: Աշակերտել է ***Ջահրիին***, հմտացել աշուղ. արվ–ում, սովորել սազ և ջութակ նվազել: Ստեղծագործել է հայ. և թուրք.: Շրջել է Արմ. Հայաստանում:

ՖԻԶԻԿԱ (հուն.՝ physis – բնություն), գիտություն բնության մասին. ուսումնասիրում է նյութ. աշխարհի պարզագույն, միևնույն ժամանակ առավել ընդհ. հատկությունները: Ըստ ուսումնասիրվող օբյեկտների՝ բաժանվում է տարր. մասնիկների, ատոմ. միջուկների, ատոմների, մոլ–ների, պինդ մարմնի, պլազմայի և այլ Ֆ–ի: Տես.

Ֆ–ի հիմն. բաժիններից են մեխանիկան, էլեկտրադինամիկան, օպտիկան, քվանտ. մեխանիկան, դաշտի քվանտ. տեսությունը:

Ֆ. սկսել է զարգանալ դեռևս մ. թ. ա. (*Դեմոկրիտես, Արքիմեդ* և ուր.): Մ. թ. XVII դ–ում ստեղծվել է դաս. մեխանիկան (Ի. *Նյուտոն*): XIX դ–ի վերջին հիմնականում ամբողջացվել է դաս. Ֆ.: XX դ–ի սկզբին Ֆ–ում տեղի են ունեցել հեղաշրջում. փոփոխություններ, այն դարձել է քվանտ. (Մ. *Պլանկ*, Է. *Ռեզերֆորդ*, Ն. *Բոր*), 1920–ական թթ–ին մշակվել է քվանտ. *մեխանիկան*՝ միկրոմասնիկների շարժման հետևողական տեսությունը (Լ. *Դը Բրոյլ*, Է. *Շրյոդինգեր*): XX դ–ի սկզբին ի հայտ է եկել տարածության և ժամանակի մասին նոր գիտ–յունը՝ *հարաբերականության տեսությունը*, Ֆ. դարձել է ռելյատիվիստական, XX դ–ի 2–րդ կեսին տեղի է ունեցել Ֆ–ի հետագա, էական ձևափոխությունը, որը կապված էր ատոմի միջուկի կառուցվածքի, տարր. մասնիկների հատկությունների (Է. *Ֆերմի*, Ռ. *Ֆեյնման*, Մ. *Գել–Ման* ևն) կոնդենսացված միջավայրերի (Ջ. *Բարդին*, Լ. *Լանդաու*, Ն. Ն. *Բոգոլյուբով* ևն) իմացության հետ:

Ֆ. ժամանակակից տեխնիկայի (նեբառյալ միջուկ. էներգետիկան, տիեզ. տեխնիկան, քվանտ. էլեկտրոնիկան, հաշվող. տեխնիկան, գիտատար, ռեսուրսախնայող տեխնոլոգիաները) ու նրա զարգացման հիմքն է: Ֆ–ի նոր գաղափարների իրազործումը, իր հերթին, բազմակի անգամներ մեծացնում է ֆիզ. փորձերի հենքն և այդ փորձերի մողելավորման (նյութերի ծայրահեղ վիճակների, Երկրի, Արեգակն. համակարգի և հեռավոր Տիեզերքի, ջերմամիջուկ. սինթեզի, համակարգչ. մողելավորման և այլ հետազոտություններ) հնարավորությունները:

Ֆ–ի զարգացումը Հայաստանում սկիզբ է առել *Անանիա Շիրակացուց*: Միջին դարերում բնագիտ–յան ոլորտում զգալի ավանդ են ներդրել Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, Հովհաննես Սարկավագը, Հովհաննես Երզնկացին, Ղուկաս Վանանդեցին և ուր.: Այս բնագավառում լուրջ գործունեություն են ծավալել ՄՄ միաբանները՝ սկսած XVIII դ–ից: Նրանք են ստեղծել Ֆ–ի 1–ին հայկ. լաբորատորիաները, կազմել դասագրքեր: Բուն Հայաստանում Ֆ. կազմավորվել է 1919–ին ԵՊՀ–ի հիմնադրումով, ձևավորվել է հայ ֆիզիկոսների նոր սերունդ՝ Ա. Հակոբյան, Հ. Անժուր, Հ. Նավակատիկյան, Ա. Տեր–Մկրտչյան, Ա. Տոնոյան և ուր.: Ֆ–ի հետագա զարգացումը Հայաստանում կապված է Արտեմ Ալիխանյանի և Վիկտոր Համբարձումյանի անունների հետ, ստեղծվել են խոշոր գիտ. կենտրոններ՝ Երևանի ֆիզիկայի, ֆիզ. հետազոտությունների, ռադիոֆիզ. չափումների և այլ ինստ–ներ և ՀՀ ԳԱԱ–ն: Կիրառ. Ֆ–ում ուշագրավ ներդրում ունի ֆիզիկոս Գրիգոր Գուրզադյանը, որի գլխավորությամբ Գառնիում պատրաստվել են ԵԱՄ–ի վրա տեղադրվող աստղադիտակներ: Հետագայում լուրջ ձեռքբերումներ են գրանցվել ռադիոֆիզիկայի ու էլեկտրոնիկայի, քվանտ. էլեկտրոնիկայի և ոչ գծային օպտիկայի, կիսահաղորդիչների, պինդ մարմնի, լիցքավորված մասնիկների Ֆ–ների բնագավառում:

ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՅԻՄ, երկրագնդի մակերևույթի տարածք. բաժանման համակարգ, որը հիմնված է բնական պայմանների ներքին միասնության և ինքնատիպության վրա: ՀՀ և ԼՂՀ–ի տարածքում առանձնացվել են 8 ֆիզիկաաշխարհագր. շրջաններ (Արարատյան, Արցախի, Զանգեզուրի, Լոռու, Շիրակի, Վայքի, Սևանի և Տավուշի):

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գիտ–յուն Երկրի աշխարհագր. թաղանթի և նրա բաղադրիչների մասին: Բաղկացած է ընդհ. երկրագիտ–յան, լանդշաֆտագիտ–յան և հնաաշխարհագրության ճյուղերից: ՀՀ–ում որպես գիտ–յուն զարգացել է խորհրդ. ժամանակաշրջանում, սակայն ֆիզիկաաշխարհագր. ուսումնասիրություններն իրականացվել են Արլ. Հայաստանը Ռուսաստանին միանալուց (1828) հետո: 1929–ին ԵՊՀ–ում ստեղծվել է ընդհ. աշխարհագրության ամբիոնը, 1934–ին՝ աշխարհագրաերկրբ. ֆակ.:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՇՏԵՐ, մատերիայի հատուկ ձև. ազատության անվերջ մեծ թվով աստիճաններ ունեցող ֆիզ. համակարգեր: Ֆ. դ–ի օրինակ են էլեկտրամագնիս. և գրավիտացիոն, միջուկ. ուժերի, տարր. մասնիկների ալիք. (քվանտացած) դաշտերը:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, մարդու առողջության ամրապնդման, նրա ֆիզ. ունակությունների զարգացման, մարզ. ձեռքբերումների համար մշակված միջոցների ամբողջությունը՝ իր տես. ու բարոյահոգեբ. գաղափարախոսությամբ:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, հիմնադրվել է 1945–ին՝ Հայկ. պետ. մանկավարժ. ինստ–ի ֆիզկուլտուրայի ֆակ–ի հիմքի վրա: Ունի մարզչամանկավարժ. և մարզաառողջարար. ֆակ–ներ՝ 26 մասնագիտ–յուններով, հեռակա ուսուցման բաժին: 2016–ին ուներ ավելի քան 3 հզ. ուսանող: Ռեկտորներ՝ Հայկ Փարսադանյան, Աղասի Չարչօղլյան, Լորիս Քալաշյան, Հրաչիկ Թոփալյան, Ռուբեն Գալստյան, Վահրամ Առաքելյան (1998–ից):

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՆՆԵՐ, ֆիզ. օրենքների մաթ. արտահայտությունների մեջ մտնող հաստատուն մեծությունները: Հիմնարար ֆիզ. օրենքների (օր.՝ *փոխազեցության ձգողության օրենք*) մեջ մտնող կամ միկրոաշխարհի մասնիկները և շարժընթացները բնութագրող Ֆ. հ. անվանում են հիմնարար, համապիտանի կամ համաշխ. Ֆ. հ. (այդպիսիք են գրավիտացիայի հաստատունը, Պլանկի հաստատունը, լույսի արագությունը ևն): Ֆ. հ. որոշում են փորձնականորեն կամ հաշվում են մեծագույն ճշտությամբ, ինչն անհրաժեշտ է ֆիզ. երևույթների քանակ. հետազոտությունների և ֆիզ. տեսությունների ստուգման համար:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ Միքայել Տեր–Միքայելյանի անվան ՀՀ ԳԱԱ (ՖՀԻ), կազմակերպվել է 1968–ին Աշտարակում՝ ՀԽՍՀ ԳԱ կենտր. ԳՀ ֆիզտեխ. լաբորատորիայի (1962) հիման վրա: Հետազոտությունների հիմն. ուղղություններն են լազեր. ֆիզիկան, ոչ գծային և քվանտ. օպտիկան, լույսի փոխազեցությունը նյութի հետ, բյուրեղների աճեցումը և ուսումնասիրությունը, բարձրջերմաստիճան. գերհաղորդականությունը, գիտ. սարքաշինությունը: ՖՀԻ պինդմարմնային քվանտ. գեներատորների ստեղծման աշխ–ն արժանացել է ՀՀ Պետ. մրց–ի (1981): Տնօրեններ՝ Միքայել Տեր–Միքայելյան, Էդուարդ Վարդանյան, Արամ Պապոյան (2006–ից):

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՔԻՄԻԱ, քիմիայի բաժին, որը քիմ. երևույթները մեկնաբանում և նրանց օրինաչափությունները բացահայտում է ֆիզիկայի ընդհ. սկզբունքների հիման վրա: Ֆ. ք. անվանումն առաջարկել է Մ. Վ. Լոմոնոսովը, որն առաջինն է ձևակերպել (1752) նրա առարկան և խնդիրները: XIX դ–ի վերջին Ֆ. ք. դարձել է քիմ. գիտ–յան ինքնուրույն բնագավառ: Ժամանակակից Ֆ. ք–ի հիմն. խնդիրներն են նյութի վիճակի և կառուցվածքի, քիմ. կապերի, քիմ. փոխարկումների մեխանիզմի ու կինետիկայի ուսումնասիրությունը՝ օգտագործելով նորագույն փորձարար. և հաշվարկային եղանակները: Ֆ. ք. ներառում է քվանտ. քիմիան, քիմ. թերմոդինամիկան, քիմ. կինետիկան, կատալիզի մասին ուսմունքը, մեխանոքիմիան ևն: Այն սովորաբար ընդգրկում է կոլոիդների քիմիան, էլեկտրաքիմիան, լուսաքիմիան, ճառագայթում. քիմիան, պլազմոքիմիան, լազերաքիմիան ևն: Ֆ. ք. անօրգ., օրգ., վերլուծ. քիմիաների, ինչպես նաև քիմ. տեխնոլոգիայի տես. հիմքն է:

ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ Երևանի (ԵՖԻ) Արտեմ Ալիխանյանի անվան: Հիմնադրել են Աբրահամ և Արտեմ *Ալիխանյանները*, 1943–ին՝ որպես ԽՍՀՄ առաջին մշտ. գործող բարձրլեռն. (3200 *մ*) կայան (տես *Արագածի փիեզերական ճառագայթների հետազոտման կայան*): 1943–62–ին՝ ՀՀ ԳԱ, 1962–91–ին ԽՍՀՄ ատոմ. էներգիայի օգտագործման պետ. կոմիտեի կազմում էր, 1991–ից՝ ինքնուրույն ԳՀԻ: 2011–ին ԵՖԻ վերակազմավորվել է «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի: Մինչև 1991–ը ԵՖԻ բարձր էներգիաների ֆոտոնների և էլեկտրոնների միջոցով տարր. մասնիկների հիմնարար հատկությունների փորձարար. ուսումնասիրման բնագավառի ԽՍՀՄ գլխավորող կազմ–յունն էր: 1960–ին Արագածի լանջին ստեղծվել է *Նոր Ամբերդի կայանը* (2000 *մ*): 1967–ին ինստ–ում գործարկվել է 6 ԳԷՎ–անոց Երևանի էլեկտրոն. օղակաձև արագացուցիչը (ԱՐՈՒՍ): Ինստ–ի գլխ. ձեռքբերումներից են տիեզ. ճառագայթների մեջ պրոտոնների և նեյտրոնների հայտնաբերումը, նաև մյուոնների և պրոտոնների միջև ընկած զանգվածներով մասնիկների գոյության մասին առաջին վկայությունները: Ինստ–ի վերջին ձեռքբերումներից են Արեգակի վրա արագացվող բարձր էներգիայով պրոտոնների գրանցումը և Արագածի տիեզ. միջավայրի կենտրոնի ստեղծումը 2000–ին: ԵՖԻ–ում ստեղծվել են լայն կայծային խցիկներ և անցում. ճառագայթման դեդեկտորներ: Ինստ–ի գիտնականները մասնակցում են արտերկրում միջանկյալ և բարձր էներգիայի գիտափորձերին (ILab, DESY, CERN–LHC, MAX–lab, MAMI), JACT համակարգերի շահագործմանը Կանարյան կղզիներում (Magic) և Նամիբիայում (Hess): Տես. բաժինը նշանակալի ձեռքբերումներ է ունեցել B–մեզոնի ֆիզիկայում, QCD և հարակից ուղղություններում: 1980–ականների կեսերին ԵՖԻ–ում մշակվել է ստերեոսկոպիկ մոտեցման հայեցակարգ՝ գերբարձր էներգիայի գամմա–ճառագայթների աստղաֆիզիկայում: Կիրառ. ֆիզիկայի բաժանմունքը հաջողությամբ ուսումնա–

սիրել է նոր լայնաշերտ լազեր. նյութերի էլեկտրոն-էներգետիկ. կառուցվածքը՝ սինքրոտրոն, ճառագայթման սպեկտրի տարբեր շրջաններում: Այդ հետազոտությունները կատարվել են DESY-ում և կշարունակվեն MaxLab–II–ում (Շվեդիա): Տնօրեններ՝ Արտեմ Ալիխանյան (1943–73), Անդրեյ Ամատունի (1973–92), Ռուբեն Մկրտչյան (1992–2001), Հրաչյա Ասատրյան (2001–08), Աշոտ Չիլինգարյան (2008–ից):

ՖԻԶԻԿԱՅԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ (ՖԿՊԻ) ՀՀ ԳԱԱ, հիմնադրվել է 1980–ին Երևանում: ՖԿՊԻ-ում ձևավորվել է «Ակուստաֆիզիկա» նոր գիտ. ուղղությունը, որն ուսումնասիրում է ակուստիկ դաշտերի առկայությամբ տեղի ունեցող ֆիզ. երևույթները: Ինստ-ի հետազոտությունների հիմն. բնագավառներն են՝ կոնդենսացված վիճակի ֆիզիկան, ֆոտոնների և տարր. մասնիկների փոխազդեցությունն արտաքին ազդակների առկայությամբ, ակուստաֆիզիկան, պլազմայի ֆիզիկան, նյութագիտ-յունը, կիրառ. ֆիզիկան և SS գիտատար սարքաշինությունը: Տնօրեններ՝ Ալպիկ Մկրտչյան (հիմնադիր-տնօրեն), Արտակ Մկրտչյան (2006–ից):

ՖԻԶԻԿԱՔԻՄԻԱԿԱՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, համալիր գիտ-յուն օրգանիզմների կենսագործունեության ֆիզ-քիմ. հիմունքների մասին: Ներառում է կենսաքիմ., կենսաֆիզ., մոլ. կենսբ-յունը և կենսաօրգ. քիմիան: Եզրույթն օգտագործվում է 1970-ական թթ–ի վերջից:

ՖԻԶԻԿԱՔԻՄԻԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, թերմոդինամիկորեն հավասարակշռված համակարգերի ուսումնասիրման եղանակ՝ համակարգի ֆիզ. հատկությունների քանակի և նրա բաղադրության գրաֆիկ. կախվածության (բաղադրություն–հատկություն դիագրամ) վերլուծության հիման վրա: Հնարավորություն է տալիս հաստատելու ֆազերի առկայությունն ու բաղադրությունը, դրանց առաջացումը քիմ. միացությունների համակարգում առանց համակարգից անջատելու: Կիրառում են բազմաբաղադրիչ բազմաֆազ համակարգերի (մետաղ. համաձուլվածքներ, միներալներ, աղերի լուծույթներ ևն) վերլուծության համար:

ՖԻԶԻՈԹԵՐԱՊԻԱ (< physis – բնություն և *թերապիա*), բժշկագիտ-յան բնագավառ. ուսումնասիրում է բնական (օդ, ջուր, արեգակի ջերմություն, լույս) և արհեստ. (էլ. հոսանք, մագնիս. դաշտ ևն) ֆիզ. գործոնների ֆիզիոլոգ. ազդեցությունը, նաև մշակում բուժիչ և կանխարգելիչ նպատակներով նրանց օգտագործման եղանակներ:

ՖԻԶԻՈԼՈԳԻԱ (< հուն. physis – բնություն և *…լոգիա*), գիտ-յուն ամբողջ. օրգանիզմի և նրա առանձին մասերի (բջիջներ, օրգաններ, ֆունկցիոնալ համակարգեր) մասին: Ուսումնասիրում է կենդանի օրգանիզմի տարբեր ֆունկցիաների (աճ, բազմացում ևն) մեխանիզմները, միմյանց հետ նրանց կապը, նրանց հարմարումը շրջակա միջավայրում, առանձնյակի ծագումն ու կազմավորումն էվոլյուցիայի և անհատ. զարգացման ընթացքում: Լուծելով սկզբունքորեն ընդհ. խնդիրներ՝ մարդու և կենդանիների Ֆ. և բույսերի Ֆ. ունեն տարբերություններ: Մարդու և կենդանիների Ֆ-ի հիմն. խնդիրն օրգանիզմում նյարդ. համակարգի կարգավորող ու ինտեգրող դերի ուսումնասիրությունն է (Կ. Բեռնար, Գ. Հելմհոլց, Չ. Շերինգտոն, Ի. Մ. Սեչենով, Ն. Ե. Վվեդենսկի, Ի. Պ. Պավլով, Ա. Ա. Ուխտոմսկի և ուր.): Բույսերի Ֆ-ի համար, որը բուսաբ-յունից առանձնացել է XIX դ–ում, ավանդական է հանք. սնուցման, լուսասինթեզի, ծաղկման, պտղակրության ևնի ուսումնասիրությունը: Այն բուսաբուծության և ագրոնոմիայի տես. հիմքն է, որով զբաղվել են են Ա. Ֆամինցինը և Կ. Ա. Տիմիրյազևը: Ֆ. սերտորեն առնչվում է անատոմիայի, բջջաբանության, սաղմնաբանության, կենսաքիմիայի և կենսբ. այլ գիտ-յունների հետ: ՀՀ-ում ֆիզիոլոգ. հետազոտություններ կատարվել և կատարվում են ՀՀ ԳԱԱ *ֆիզիոլոգիայի ինստիտուտում*:

ՖԻԶԻՈԼՈԳԻԱ ԲՈՒՅՍԵՐԻ, կենսբ. գիտ-յուն բուս. օրգանիզմների կենսագործունեության ընդհ. օրինաչափությունների մասին: Ուսումնասիրում է բուս. օրգանիզմների՝ ջրի ու հանք. նյութերի կլանման, բույսերի աճման և զարգացման, ծաղկման ու պտղաբերման, արմատ. և օդ. սնուցման, կենսասինթեզի շարժընթացները: Որպես գիտ-յուն՝ ձևավորվել է XIX դ–ի սկզբին:

ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐ, ջր. լուծույթներ, որոնք աղային բաղադրությամբ, pH-ի մեծությամբ և այլ հատկություններով մոտ են արյան շիճուկին (NaCl-ի 0,9–%–անոց, գլյուկոզի 4,5–%–անոց, Ռինգերի, Լոկի և այլ լուծույթներ): Կիրառում են ներերակ. կամ ենթամաշկ. ներարկումների համար՝ օրգանիզմում հեղուկի անբավարարության դեպքում:

ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **հոգեֆիզիոլոգիա**, հոգեբ-յան բնագավառ. ուսումնասիրում է հոգեկան գործընթացների (ընկալում, հիշողություն, հույզ, մտածողություն, վարքի դրդապատճառներ ևն) ֆիզիոլոգ. հիմքերն ու մեխանիզմները: Ֆ. ի. սկսել է զարգանալ XIX դ–ի 2–րդ կեսից (Ի. Մյուլլեր, Է. Վեբեր, Գ. Ֆեխներ, Հ. Հելմհոլց, Վ. Վունդտ և ուր.), բուռն զարգացում է ունեցել 1930-ական թթ–ից սկսած (Ա. Լուրիա, Պ. Միլներ, Ն. Պ. Բեխտերևա և ուր.):

ՖԻԶԻՈԼՈԳԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀՀ ԳԱԱ Լևոն Օրբելու անվան, հիմնադրվել է 1943–ին (1959–ից՝ Լևոն *Օրբելու* անվ.) Երևանում: Ինստ-ում ուսումնասիրում են ուղեղիկի, ուղեղաբնի, վեգետատիվ նյարդ. համակարգի գործունեության նյարդաֆիզիոլոգ. մեխանիզմները, ԿՆՀ-ի վնասված ֆունկցիաների փոխհատուցման ու վերծանման, պլաստիկության, նյարդահյուսվածաքիմիայի բնագավառի հարցերը, նյարդ. գոյացությունների գործունեության նեյրոն., սինապս., օրգանահամակարգ. մեխանիզմները: Զբաղվում են նաև նյարդ. գործունեության մաթ. մոդելավորման, մարդու հոգեֆիզիոլոգիայի, ջերմակարգավորման մեխանիզմների պարզաբանման հարցերով:

Գիտ. ղեկ-ներ ու տնօրեններ են եղել Խ. Կոշտոյանցը, Գ. Սուշեղյանը, Է. Հասրաթյանը, Ա. Քարամյանը, Ա. Ալեքսանյանը, Ս. Բակունցը, Վ. Ֆանարջյանը, Լ. Սանվելյանը, Ք. Ղազարյանը, Ն. Այվազյանը (2012–ից): Ինստ-ին կից գործում է Հայաստանի ֆիզիոլոգ. ընկ-ը և Ուղեղի հետազոտության միջազգ. կազմ-յան հայկ. միավորումը:

ՖԻԶՈՒԼԻ, Ֆուզուլի, Սուհամմեդ Սուլեյման օղլի (1494–1556), իրաքցի արաբ բանաստեղծ: Գրել է թուրք., պարսկ., արաբ.: Ֆ-ու բանաստեղծ. ժառանգության մեջ մեծ տեղ են գրավում գազելը, ռուբային ու քասիդը: Հեղինակ է քնար., փիլ. բանաստեղծությունների 3 ժող-ի, «Բողոք» քաղ. երգիծ. երկի: Ֆ-ի ստեղծագործության բարձրակետը «Լեյլի և Մեջնուն» (1536–37) քնարաէպիկ. պոեմն է, որտեղ ընդդիմանալով մահմեդականության արգելքներին, հաստատել է մարդու երկր. սիրո իրավունքը: Նրա պոեզիան մեծ ազդեցություն է թողել Մերձ. Արևելքի ժողդ-ների գրկ-յան զարգացման վրա:

…ՖԻԼ, (հուն.՝ phileo – սիրել), բարդ բառերի մաս. նշանակում է «սեր, հակում» (օր.՝ ացիդոֆիլ), ցույց է տալիս որևէ հատկություն, երևույթի նկատմամբ հակումը:

ՖԻԼԱԴԵԼՖԻԱ (Philadelphia), ք–նվինգսթ ԱՄՆ Փենսիլվանիա նահ–ում՝ Դելավեր գետի ստորին հոսանքում՝ Ատլանտ. օվկ–ից 150 *կմ* հեռու: Բն.՝ 1,5 մլն, ագլոմերացիայում՝ ավելի քան 5,8 մլն (2010): Ունի օդանավակայան, մետրոպոլիտեն: Խոշոր արդ., ֆին., առևտր. և մշակութ. կենտրոն է: Կատարվում են ժամանակակից բժշկ. և կենսատեխնոլոգ. բնագավառների հետազոտություններ: Հիմնադրվել է 1682–ին: 1790–1800–ին եղել է ԱՄՆ մայրաքաղաքը:

Ֆ–ի հայ համայնքը ձևավորվել է XIX դ–ի վերջ–XX դ–ի սկզբին, ստվարացել 1895–96–ի հայկ. ջարդերից և հատկապես ԱՀՊ–ից հետո, երբ այստեղ են հաստատվել Արմ. Հայաստանից գաղթած հայերը: Սակայն հայտնի է նաև, որ դեռ ԱՄՆ–ում Քաղաքաց. պատերազմի (1861–65) ժամանակ Ֆ–ի հոսպիտալում աշխատել են 3 հայ բժիշկներ: Համայնքի կազմավորման հետ ստեղծվել են ազգ. կազմ-յուններ. 1899–ին՝ «Հայոց առաջադիմական ընկերությունը», 1910–ին՝ ՀԲԸՄ Ֆ–ի մասնաճյուղը, 1911–ին՝ «Արաբկիրի ուսումնասիրաց միությունը», 1916–ին՝ «Վարդանանց ասպետներ» կազմ-յունը, լույս են ընծայել պարբ–ներ [(«Կռունկ» (1919–27), «Փարոս» (1922–ին), «Հայ սիրտ» (1923–32), «Հորիզոն» ևն]: Ներկայում Ֆ–ում ապրում է շուրջ 15 հզ. հայ: Գործում են 3 առաքել. (Սբ Գրիգոր Լուսավորիչ, Սբ Սահակ–Սբ Մեսրոպ, Սբ Երրորդություն), 1 ավետարան. և 1 կաթոլիկ եկեղեցիներ, որոնց կից՝ մեկօրյա դպրոցներ, նաև Հայ քույրերի ամենօրյա վարժարանը, ՀՕՄ–ի, ՀՄԸՄ–ի, ԹՄՄ, հայրենակց. մի շարք միությունների մասնաճյուղերը, «Արարատ» իրավաբ. միությունը, «Վիլյամ Սարոյան» թատերախումբը, «Արարատ» պարախումբը, «Քնար» երգչախումբը ևն:

ՖԻԼԱՏԵԼԻԱ (< *ֆիլ…* և հուն.՝ āteleia – տուրքերից ազատում), դրոշմանիշերի, փոստ. նամականիշների հավաքածուների ստեղծում: «Ֆ.» տերմինն առաջինը գործածել է ֆրանսիացի հավաքորդ Գ. Էրպենը 1864–ին: 1926–ին հիմնադրվել է ֆիլատելիստների միջազգ. միությունը՝ ՖՄՄ (2016–ին՝ շուրջ 90 անդամ երկիր): 1961–ին ստեղծվել է Հայաստանի ֆիլատելիստների միությունը, 1993–ից՝ ՖՄՄ անդամ: 1994–98–ին Երևանում լույս է տեսել «Հայաստանի ֆիլատելիա» հանդեսը: Պարբերաբար կազմակերպվում են դրոշմանիշերի ցուցահանդեսներ:

ՖԻԼԱՏՈՎ Դմիտրի Պետրովիչ (1876–1943), ռուս. սաղմնաբան, փորձարար. սաղմնաբանության հիմնադիրը Ռուսաստանում: Աշխ-ները վերաբերում են

զարգացման մեխանիկայի տես. հիմունքներին, օնտոգենեզի օրինաչափությունների համեմատափորձարար. հետազոտություններին: Մասնակցել է կովկաս. զուրբի էկոլոգիայի ուսումնասիրության արշավներին, Կոմանդորյան կղզիներում՝ ծովաշան թվաքանակի հաստատման, Արալյան ծովում՝ ձկնարդյունագործության գնահատման աշխ-ներին:

ՖԻԼԱՏՈՎ Լեոնիդ Ալեքսեևիչ (1946–2003), ռուս. դերասան: ՌԴ ժող. արտիստ (1996): 1969-ից՝ Մոսկվայի Տագանկայի, 1993-ից՝ «Տագանկայի դերասանների ընկերակցություն» թատրոնների դերասան (Դմիտրին՝ «Փոխանակում»՝ ըստ Յ. Վ. Տրիֆոնովի, Վարպետ՝ «Վարպետը և Մարգարիտան»՝ ըստ Մ. Ա. Բուլգակովի, Բարոն և դոն Կառլոս՝ «Խնջույք ժանտախտի ժամանակ»՝ ըստ Ա. Ս. Պուշկինի «Փոքրիկ ողբերգությունների», ևն): Նկարահանվել է «Անձնակազմ», «Հաջողություն», «Մերմնաքաղները», «Ընտրյալները», «Մոռացված մեղեդի ֆլեյտայի համար», «Ձերո քաղաքը» և այլ ֆիլմերում: Հայտնի է նաև որպես բանաստեղծ, դրամատուրգ, կինոռեժ. («Շան տղերքը», 1991): «Որպեսզի հիշեն...» հեռուստահաղորդման հեղինակ և վարող (1995–2003): ՌԴ Պետ. մրց. (1995):

ՖԻԼԱՏՈՎ Վլադիմիր Պետրովիչ (1875–1956), ռուս. ակնաբան և վիրաբույժ: Ուկր. ԽՍՀ ԳԱ (1939) և ԽՍՀՄ ԲԳԱ (1944) ակադ.: Սոց. աշխ. հերոս (1950): Աշակել է մաշկ. ցողունով պլաստիկայի (1917), եղջերաթաղանթի փոխպատվաստման (1924), հյուսվածքաբուժության մեթոդներ: Ստեղծել է կենսածին խթանիչների մասին ուսմունք: ԽՍՀՄ Պետ. մրց. (1941):

ՖԻԼԱՏՈՎՆԵՐ, կրկեսի ռուս. արտիստների, վարժեցնողների ընտանիք: 1. **Իվան Լազարևիչ Ֆ.** (1873–1956), առյուծներ սանձահարող: Կենդանիների կրկեսների համակարգի հիմնադիրը ԽՍՀՄ-ում: 2. Որդին՝ **Վալենտին Ֆ.** (1920–1979), ԽՍՀՄ ժող. արտիստ (1969): 1949-ից հանդես է եկել «Արջերի կրկես» ատրակցիոնի, 1975-ից՝ «Գազանների կրկեսի» հետ: Կրկեսի արտիստներ են նաև Վալենտին Ֆ-ի դուստրերը՝ **Լյուդմիլա Ֆ.** (ծ. 1942), ՌԽՖՍՀ վաստ. արտիստ (1983), և **Տատյանա Ֆ.** (ծ. 1949), ՌԴ ժող. արտիստ (2000):

ՖԻԼԴԻՆԳ (Fielding) Հենրի (1707–1754), անգլիացի գրող: Հեղինակ է «Ողբերգությունների ողբերգություն կամ Մեծն Թոմ մատնաչափիկի կյանքն ու մահը» (1731), «Ճանապարհորդություն հանդերձյալ աշխարհ և այլն» (1743) և այլ պիեսների, «Դոն Կիխոտն Անգլիայում» (1734), «1736 թվականի պատմական օրացույց» (1737) քաղ. և այլ կատակերգությունների, «Հանգուցյալ Ջոնաթան Ուայլդ Մեծի կյանքի պատմությունը» (1743) երգիծ., «Ամելիա» (1752) վեպերի, «Ջոզեֆ Էնդրուսի ու նրա բարեկամ պարոն Աբրահամ Ադամսի արկածների պատմությունը» (1742) և «Թոմ Ջոնս ընկեցիկի պատմությունը» (1749) վեպ-էպոպեաների, «Դեպի Լիսաբոն ճանապարհորդության օրագիր» (հրտ.՝ 1755) կենսագր. երկի:

ՖԻԼԴՍ (Fields) Ջոն Չառլզ (1863–1932), կանադացի մաթեմատիկոս: ԽՍՀՄ ԳԱ արտ. թղթ. անդամ (1924): Աշխ-ները վերաբերում են ֆունկցիաների հանրահաշվին: Ստեղծել է հիմնադրամ, որի միջոցներից (սկսած 1932-ից) Մաթեմատիկոսների միջազգ. միությունը 4 տարին մեկ (մաթ. միջազգ. կոնգրեսում) մրց. է շնորհում երիտասարդ (մինչև 40 տարեկան) մաթեմատիկոսներին:

ՖԻԼԷՄԲՐԻՈԳԵՆԵԶ (< հին հուն. phylon – ցեղ, սեռ, տեսակ և embrion – սաղմ և ***գենեզ***), օրգանիզմների անհատ. զարգացման՝ օնտոգենեզի փոփոխությունն էվոլյուցիայի ընթացքում: Եզրույթը առաջարկել է Ա. Ն. ***Սևերցովը*** 1910-ին: Համաձայն Ֆ-ի տեսության՝ ֆիլոգենեզի սկզբնապատճառ են օնտոգենեզի փոփոխությունները, առանց որոնց սերունդները չեն տարբերվի նախնիներից: Ֆ-ի միջոցով կարող է փոփոխվել ինչպես ողջ օրգանիզմի, այնպես էլ նրա առանձին մասերի զարգացման ընթացքը, ընդ որում՝ օնտոգենեզի ցանկացած փուլում:

ՖԻԼԻՆ Ալեքսանդր Իվանովիչ (1903–1942), ռուս փորձարկող օդաչու, ավիացիայի գեն-մայոր (1940): Փորձարկել է մի շարք կործանիչներ (այդ թվում՝ Ի-14-ը՝ հավաքած շասսիով): Մ. Մ. ***Գրոմովի*** անձնակազմում մասնակցել է նրա ռեկորդ. թռիչքին (1934): Անհիմն բռնադատվել է, գնդակահարվել, հետագայում՝ արդարացվել:

ՖԻԼԻՈԿՎԵ (լատ.՝ filioque – և որդուց), հավելում, որը IV դ-ում արևմտաեվրոպ. եկեղեցին (կաթոլիկ.) կատարել է քրիստ. «Հավատո հանգանակում»՝ Սբ Երրորդության դոգմայում, ըստ որի՝ Սբ Հոգին բխում է ոչ միայն Հայր Աստծուց, այլև «Որդուց»: Արևելյան եկեղեցիները չեն ընդունել Ֆ., որն էլ հետագայում եկեղեցիների բաժանման առիթ է դարձել:

ՖԻԼԻՊ (1206–1225), Կիլիկիայի Հայոց թագավոր՝ 1222-ից: Անտիոքի դուքս Բոհեմոնդի որդին: Հայոց գահի խնամակալ ***Կոստանդին*** սպարապետը, գահաժառանգ ***Զաբելին*** պսակելով Ֆ-ի հետ, նրան հռչակել է Հայոց թագավոր: Սակայն հայ եկեղեցու և աշխարհիկ սովորույթներին հետևելու պարտավորվածությունները չկատարելու համար Ֆ. ձերբակալվել է և մահապատժի ենթարկվել:

ՖԻԼԻՊ (աշխարհիկ անունը՝ Կոլիչյով Ֆեոդոր Ստեպանովիչ, 1507–1569), Մոսկվայի և Համայն Ռուսիո մետրոպոլիտ՝ 1566–68-ին, ՌՈՒԵ սուրբ: Հանդես է եկել Իվան IV-ի մահապատիժների դեմ: 1568-ին կարգալույծ են արել: Խեղդամահ է արել Գ. Լ. Սկուրատով-Բելսկին (հավանաբար՝ ցարի հրամանով):

ՖԻԼԻՊ (Philipe) Ժերար (1922–1959), ֆրանսիացի դերասան: 1951-ից՝ Ազգ. ժող. թատրոնում (Ռոդրիգո՝ Պ. Կոռնելի «Սիդ», ևն): Իր արվ-ում հերոս. պաթոսը համադրել է ռոմանտիկ. մելամաղձության, վառ խառնվածքի և հումորի զգացողության հետ: Կինոյում ստեղծել է երազկոտ հերոս-իդեալիստի («Ապուշը», «Գիշերային գեղեցկուհիներ»), ռոմանտիկ. («Պարմի մենաստանը», «Ֆանֆան-Տյուլպան»), բարդ հոգեբ-յան և ներքին դրամատիզմով («Մեծ զորախաղեր», «Մոնպառնաս, 19», «Խաղամոլը») հերոսներ:

ՖԻԼԻՊ (Filip) Յան (1900–1981), չեխ ինագետ և պատմաբան: Աշխ-ները վերաբերում են ինագիտ-յանը, Կենտր. Եվրոպայի, կելտերի պատմությանը: Հիմնադրել է «Արխեոլոջիք ռոզիլեդի» (չեխ.) ամսագիրը (1949): Կազմել է «Enzyklopädisches Handbuch zur Ur-und Frühgeschichte Europas» (Bd 1, 2, 1966, 1969) հանրագիտարանը, հիմնադրել գիտ. դպրոց:

ՖԻԼԻՊ I Հաբսբուրգ (Felipe I de Habsburgo, Ֆիլիպ Գեղեցիկ, 1478–1506), Կաստիլիայի թագավոր՝ 1504-ից: ***Մաքսիմիլիան I*** Հաբսբուրգի որդին: Մոր՝ Մարի Բուրգունդացու մահից (1482) հետո ժառանգել է նրա նիդեռլ. տիրույթները: 1504–06-ին ապրել է Նիդեռլանդներում, Կաստիլիայի նկատմամբ վերահսկողության համար պայքարել է գահապահ Ֆեռնանդո II-ի դեմ: Անգլիայի հետ կնքել է պայմանագիր, որով դյուրացվել է անգլ. տնտ. ապրանքների արտահանումը:

ՖԻԼԻՊ II (Felipe, 1527–1598), Իսպանիայի թագավոր՝ 1556-ից՝ Հաբսբուրգների հարստությունից: ***Կառլ V***-ի որդին: Ամրապնդել է Իսպանիայի բացարձակ միապետությունը: Կաստիլիան, Վալենսիան, Կատալոնիան, Արագոնը մասամբ զրկվել են ազատություններից: Օժանդակել է ինկվիզիցիային, պայքարել բողոքականության և հերետիկոսության դեմ, պատերազմել Անգլիայի և Ֆրանսիայի դեմ: 1580-ին Իսպանիային է միացրել Պորտուգալիան:

ՖԻԼԻՊ II (Philippe) Ավգուստ (1165–1223), Ֆրանսիայի թագավոր՝ 1180-ից, Կապետինգների հարստությունից: Վարել է իշխանության կենտրոնացման ամրապնդման քաղ-յուն, ընդարձակել է թագավոր. տիրույթները (***դոմեններ***): 1214-ին հաղթել է Բուվինի ճակատամարտում: Եղել է Խաչակրաց 3-րդ արշավանքի (1189–91) առաջնորդներից:

ՖԻԼԻՊ IV Գեղեցիկ (1268–1314), Ֆրանսիայի թագավոր՝ 1285-ից՝ Կապետինգների հարստությունից: Վարել է Ֆրանսիայի միավորման և կենտր. իշխանության ամրապնդման քաղ-յուն, 1300-ին նվաճել է Ֆլանդրիան, բայց 1302-ին Ֆլանդր. քաղաքների ապստամբության հետևանքով կորցրել այն: Պապի իշխանությունը կախման մեջ է դրել Ֆրանսիայի թագավորներից: Տամպլիերների ուխտի լուծարման իրավունք է ձեռք բերել (1312) Հռոմի պապից:

ՖԻԼԻՊ IV Հաբսբուրգ (1605–1665), 1621-ից՝ Իսպանիայի, 1621–40-ից՝ Պորտուգալիայի թագավոր: Եղել է ֆավորիտների ուժեղ ազդեցության (մինչև 1643-ը՝ Գ. Օլիվարեսի, 1643–61-ին՝ Լ. դե Արոյի) տակ: Երեսնամյա պատերազմի (1618–48) արդյունքներով ճանաչել է Միացյալ Մարզերի Հանրապետության անկախությունը, Պիրենեյան հաշտության պայմանագրով (1659) Ֆրանսիային է զիջել որոշ տարածքներ: Մերժել է Պորտուգալիայի անջատումն Իսպանիայից (1640):

ՖԻԼԻՊ V (1683–1746), Իսպանիայի թագավոր՝ 1700–24-ին և 1724-ից: Բուրբոնների իսպ. ճյուղի հիմնադիրը: ***Լյուդովիկոս XIV***-ի թոռը: Կառլ II-ի կտակի համաձայն, պահպանելով Ֆրանս. գահի նկատմամբ իրավունքը, նստել է գահին, որն էլ հանգեցրել է պատերազմի (1701–14): Լինելով Ֆրանսիայի հետ «ընտանեկան դաշինքի» (1733, 1743) մեջ՝ ավտր. ժառանգության համար մասնակցել է Անգլիայի դեմ պատերազմներին (1739–48):

ՖԻԼԻՊ VI Վալուա (Philippe VI de Valois, 1293–1350), Ֆրանսիայի թագավոր՝ 1328-ից: Վալուա հարստության հիմնադիրը: Պայքարել է Անգլիայի թագավոր Էդուարդ III-ի՝ Ֆրանսիայի գահի նկատմամբ հավակնությունների դեմ, Ֆլանդրիայի թագավոր Լյուդվիգ I-ին օգնել է ճնշելու ժող. ապստամբությունը:

Նրա օրոք է սկսվել Հարյուրամյա պատերազմը (1337–1453): Պարտություն է կրել Սլեյսի (1340) և Քրեսի (1346) ճակատամարտերում: Թագավոր. տիրույթներին է միացրել Դոֆինի և Մոնպելիեի (1349) տարածքները:

ՖԻԼԻՊ ԲԱՐԻ (Philippe le Bon, 1396–1467), Բուրգունդիայի հերցոգ՝ 1419-ից: Հարյուրամյա պատերազմի (1337–1453) մասնակից: Հոր մահվան համար ցանկանալով վրեժ լուծել Կառլ Վալուայից (Կառլ VII)՝ միացել է Անգլիային: Ընդարձակել է Բուրգունդիայի հերցոգությունը. նրան է միացրել Նամյուրը (1421, վերջնականապես՝ 1429), Բրաբանտը և Լիմբուրգը (1430), Զելանդիան և Հոլանդիան (1433), Լյուքսեմբուրգը (1443) ևն: Հիմնադրել է «Ոսկե գեղմ» ուխտը (1430):

ՖԻԼԻՊԵՆԿՈ Ալեքսանդր Գեորգիևիչ (ծ. 1944), ռուս դերասան, ռեժ.: ՌԴ ժող. արտիստ (2000): 1995-ին հիմնադրել է սեփ. թատրոն («Չատանուգայի գնացքը կամ Երբ մենք երիտասարդ էինք»՝ ըստ Վ. Ի. Սլավկինի պիեսի, Վ. Հավելի «Ձեր և մեր ազատության համար», ևն): Նկարահանվել է «Այնտեղ, անհայտ արահետներին...», «Իմ ընկեր Իվան Լապշինը», «Պոտապովի կյանքից», «Վարպետը և Մարգարիտան», «Լենինգրադ» (վերջին երկուսը՝ հեռուստասերիալ) և այլ ֆիլմերում: ՌԴ Պետ. մրց. (1978):

ՖԻԼԻՊԻՆՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, Ֆիլիպինների արմատ. բնակչության լեզուները (տագալերեն, բիսայա կամ վիսայա, իլոկաներեն ևն): Պատկանում է ավստրոլանեզյան լեզվաընտանիքի ինդոնեզ. ճյուղին:

ՖԻԼԻՊԻՆՅԱՆ ԼԵՌՆԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ, ժողգ-ների (իֆուգաո, բոնտոկի, տինգիաններ, կալինգա, գադդաններ, բուկիդնոններ, սուբանոնների, բագոբո, իվատաններ ևն) խումբ Ֆիլիպիններում: Ընդհ. թիվը՝ 2,4 մլն (2010): Պահպանում են ավանդ. հավատալիքները:

ՖԻԼԻՊԻՆՅԱՆ ԾՈՎ, Խաղաղ օվկ-ում. արմ-ում օվկ-ից առանձնացված է Ճապոն. (Հոնսյու, Կյուսյու և Ռյուկյու), Թայվան և Ֆիլիպինյան կղզիներով, արլ-ում՝ ստորջրյա լ-շղթաներով և Իձու, Օգասավարա, Կաձան և Մարիանյան կղզիներով, հվ-արլ-ում՝ Յապ և Պալաու կղզիներով: Մակերեսը՝ 5726 հզ. *կմ*^{2}, խոր.՝ մինչև 10265 *մ*: Ներառում է Ֆիլիպինյան և Արմ-մարիանյան գոգհովիտները: Գլխ. նվինգստ-ները՝ Նագոյա, Յոկոհամա (Ճապոնիա), Ապրա (Գուամ կղզի, ԱՄՆ):

ՖԻԼԻՊԻՆՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ, Խաղաղ օվկ-ի արմ-ում: Ֆ. կ-ում է *Ֆիլիպիններ* պետությունը:

ՖԻԼԻՊԻՆՆԵՐ (Pilipinos), **Ֆիլիպինների Հանրապետություն** (Republika ňg Pilipinas), պետություն Հվ-արլ. Ասիայում՝ Խաղաղ օվկ-ի Ֆիլիպինյան կղզեխմբում: Տարածքը՝ 300 հզ. *կմ*^{2}, բն.՝ 98 մլն (2016): Մայրաքաղաքը՝ *Մանիլա*: Պետ. լեզուները՝ անգլ. և թագալերեն: Կառավարման ձևը՝ նախագահահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ Կոնգրեսը (Ներկայացուցիչների պալատ և Սենատ): Կազմված է 17 վարչ. շրջաններից (ներառում են 80 պրովինցիա) և 2 ԻՄ-ից: Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է: Անդամակցում է ՄԱԿ-ին, ԱՍԵԱՆ-ին ևն: Նոր արդ. երկրներից է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 3,3 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է էլեկտրոն. և էլեկտրատեխ. ապրանքներ, հագուստ, մրգեր, պղնձի խտանյութ ևն, ներմուծում նավթամթերք, մեքենաներ և սարքավորումներ, սննդամթերք, մետաղներ ևն: Դրամ. միավորը՝ ֆիլիպինյան պեսո:

Հնում Ասիայից Ֆիլիպինյան կղզեխումբ ներթափանցած մոնղոլոիդ ցեղերը մ. թ. ա. II հզ-ամյակում մասամբ ձուլվել են նեգրաավստրալոիդ տեղաբնիկների հետ: Հետագա ներգաղթերը տեղի են ունեցել Հնդկաչինից և Ինդոնեզիայից: XIV–XV դդ-ում երկիր են թափանցել մահմեդականները: 1521-ին Ֆ. հայտնաբերել է Մագելանի արշավախումբը: Մինչև 1572-ն իսպանացիները զավթել են երկրի հս. և կենտր. մասերի գլխ. կղզիները: 1896-ին երկրում բռնկել է հակաիսպ. ապստամբություն, իսկ 1897-ի օգոստ. 23-ին ապստամբները Ֆ. հռչակել են անկախ պետություն, որը գոյատևել է մինչև դեկտ.: 1898-ին ԱՄՆ-ն պատերազմ է սկսել իսպ. գաղութները նվաճելու նպատակով: Ծավալված ազատագր. նոր պայքարում երկիրը 2-րդ անգամ հռչակվել է անկախ: 1898-ին ԱՄՆ-ի կառ-յունը, անտեսելով երկրի հռչակած անկախությունը, Իսպանիայի հետ կնքել է հաշտության պայմանագիր, որով Իսպանիան 10 մլն դոլարով Ֆ. «զիջել» է ԱՄՆ-ին: 1934-ին ԱՄՆ-ն Ֆ-ին տվել է ինքնավարություն: 1941–45-ին երկիրը գրավել են ճապոն. զորքերը: 1946-ին ԱՄՆ-ն ճանաչել է Ֆ-ի անկախությունը: 1965-ին երկրի նախագահ է դարձել Ֆ. Մարկոսը, որը հաստատել է անձնիշխան. վարչակարգ: 1986-ի զանգված. բողոքի գործողություններից հետո նա ստիպված հրաժարական է տվել: Ընտրված նախագահ Կ. Ակիտոյին 1992-ին իշխանությունից հեռացրել է Ֆ. Վ. Ռամոսի (նախագահ՝ մինչև 1998-ը) գլխավորած զինվ. խունտան: 1990-ական թթ-ին երկրում ուժեղացել է արմատ. իսլամիստների և գերձախ խմբավորումներին գործունեությունը, որը հետագայում վերածվել է ահաբեկչությունների: Ռամոսին փոխարինած Ջ. Էստարդան 2001-ին հեռացվել է նախագահի պաշտոնից՝ կասեցվել է նախագահի պաշտոնից՝ կասեցվել է նախագահի պաշտոնից՝ կասեց

է 1870-ական թթ-ին (Գերմանիա, Ֆրանսիա, Ավստրո-Հունգարիա)՝ կապված փոստ. բացիկների զանգված. թողարկման հետ:

ՖԻԼՈՄԱՖԻՏՍԿԻ Ալեքսեյ Մատվեևիչ (1807–1849), ռուս. ֆիզիոլոգ, փորձարար. ախտաբանության հիմնադիրներից Ռուսաստանում: Աշխ-ները վերաբերում են արյան փոխներարկմանը: Առաջարկել է ներերակ. նարկոզը (1847, Ն. Ի. Պիրոգովի հետ):

ՖԻԼՈՎ Բոգդան (1883–1945), բուլղար պետ. գործիչ: 1940–43-ին՝ Բուլղարիայի վարչապետ: 1940-ին ստորագրել է Վիեննայի համաձայնագիրը, որով Բուլղարիան միացել է Բեռլինի դաշնագրին: Մահապատժի է ենթարկվել:

ՖԻԼՈՔԻՆՈՆ, K վիտամին, ճարպալույծ վիտամին: Մասնակցում է արյան մակարդման գործոնների կենսասինթեզին: Պարունակվում է բույսերի կանաչ մասերում: Մարդու և կաթնասունների մոտ առաջանում է աղիք. միկրոֆլորայում: Անբավարարությունը հանգեցնում է արյունահոսության, որոշ ֆերմենտների ակտիվության նվազման:

ՖԻԼՈՔՍԵՐԱ, խաղողենու կարանտին. վնասատու: Վնասարեր են տերև. և արմատ. ձևերը: Տարածված են լայնորեն: Կանաչադեղնավուն են: Երկ.՝ 0,8–1,2 *մմ*: Մնվում են տերևների (առաջացնում են գալեր) և արմատների հյութով:

ՖԻԽՏԵ (Fichte) Յոհան Գոտլիբ (1762–1814), գերմանացի փիլ. և հաս. գործիչ: Գերմ. դաս. իդեալիզմի ներկայացուցիչ: Ենայի համալսարանի պրոֆ. (1794–99), որը ստիպված է եղել լքել աթեիզմի մեջ մեղադրվելու համար: «Խոսք գերմանացի ազգին» ճառով (1808) գերմանացիներին բարոյական վերածննդի և միավորման կոչեր է արել: Մերժել է Կանտի «ինքնին իրը»: Ֆ-ի «գիտության մասին ուսմունքի» կենտր. հասկացությունն անդեմ համընդհ. «ինքնագիտակցության» գործունեությունն է, «Ես-ը», որը ներառում է իրեն և իր հակադրությունը՝ առարկաների աշխարհը՝ «ոչ Ես-ը»: Ինքնաեանթադրվող «Ես-ի» անվերջ ստեղծագործ. գործընթացի դիալեկտիկան վերամշակված տեսքով ընդունել են Ֆ. *Շելինգը* և Գ. *Հեգելը*:

ՖԻԿԻ ՕՐԵՆՔՆԵՐ, դիֆուզիայի օրենքներն իդեալ. լուծույթներում՝ արտաքին ազդեցությունների բացակայության դեպքում: 1-ին օրենքը սահմանում է մասնիկների կայուն դիֆուզ. հոսքը, համեմատական է դրանց խտության գրադիենտին: 2-րդ օրենքը նկարագրում է անկայուն դիֆուզիայով պայմանավորված խտության փոփոխությունը: Հայտնաբերել է (1855) գերմանացի ֆիզիկոս Ա. Ֆիկը (1829–1901):

ՖԻԿՈՄԻՑԵՏՆԵՐ (Phycomycetes), ստորակարգ սնկերի դաս: Սովորաբար ունեն զարգացած, բազմակորիզ, ոչ բջջ. սնկամարմին: Հայտնի է շուրջ 800 տեսակ: Բազմացումը սեռական է՝ գամետներով, և անսեռ սպորներով: Ֆ-ի մեծամասնությունը *սապրոֆիտ* է և ապրում է ջրում, ավելի բարձր կազմակերպվածները հարմարվել են ցամաք. կենսակերպին: Որոշ Ֆ. բույսերի, կենդանիների և մարդու մակաբույծներ են:

ՖԻԿՈՒՍ (Ficus), թթազգիների ընտանիքի մշտադալար բույսեր (լիաններ, էպիֆիտներ, ծառեր): Հանդիպում է 800 տեսակ, հիմնականում՝ Հնդկաստանի և Զոնդյան կղզիների արևադարձ. անտառներում: Որոշ մշակովի տեսակներ (թզենի, ժանտաթզենի) ունեն ուտելի պտուղներ, որոշ մասը՝ արժեքավոր բնափայտ: Գեղազարդիչ բույս է (նաև սենյակային):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ, տնտ. վիճակագրության ճյուղ, որի ուսումնասիրության առարկան ֆինանսների, դրամաշրջանառության ու վարկի բնագավառներում առկա օրինաչափություններն ու զանգված. գործընթացներն են:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, պետության տնտ. քաղ-յան մաս, որը դրսևորվում է ֆին. պաշարների օգտագործման, եկամուտների ու ծախսերի կարգավորման, պետ. բյուջեի ձևավորման ու կատարման, հարկ. կարգավորման, դրամաշրջանառության կառավարման, ազգ. արժույթի փոխարժեքի վրա ազդեցության ձևերով:

ՖԻՆԱՆՍՆԵՐ (ֆրանս.՝ Finances – դրամ. միջոցներ), տնտ. հարաբերությունների ամբողջություն, որոնք առաջանում են դրամ. միջոցների ֆոնդերի ստեղծման, բաշխման ու օգտագործման ընթացքում: Պետությունը Ֆ-ի համակարգի (պետ. բյուջե, տեղական Ֆ., ձեռն-ների Ֆ.) միջոցով վերաբաշխում է ազգ. եկամտի մի մասը՝ տնտ. ու սոցիալ. քաղ-յան նպատակներին համապատասխան:

ՖԻՆՋԵՆ, **Ֆինսեն** (Finsen), Նիլս Ռյուբերգ (1860–1904), դանիացի ֆիզիոթերապևտ: Ուսումնասիրել է ԱՄՁ-ի կենսբ. ազդեցությունը և նրա օգտագործումը մաշկի տուբերկուլոզի բուժման համար: Մշակել է լուսաբուժության գիտ. հիմունքները:

Նորելյան մրց. (1903):

ՖԻՆԻՔՍ, **Ֆենիքս** (Phoenix), ք. ԱՄՆ հվ-արմ-ում, Արիզոնա նահգ-ի վարչ կենտրոնը: Բն.՝ 1,6 մլն, ագլոմերացիայում՝ շուրջ 4,5 մլն (2010): Տրանսպորտ. հանգույց է, ունի օդանավակայան: Խոշոր ֆին., արդ. և մշակութ. կենտրոն է, զարգացած են տնտ-յան բարձրտեխնոլոգ. ճյուղերը (օդանավա- և հրթիռաշին., հեռահաղորդակց. ևն):

ՖԻՆԼԱՆԴԻԱ (Suomi), **Ֆինլանդիայի Հանրապետություն** (Suomen Tasavalta), պետություն Հս. Եվրոպայում: Սահմանակից է Նորվեգիային, Շվեդիային և ՌԴ-ին: Տարածքը՝ 338,1 հզ. *կմ*², բն.՝ 5,56 մլն (2016): Մայրաքաղաքը՝ *Հելսինկի*: Պետ. լեզուները՝ ֆիննե., շվեդ.: Կառավարման ձևը՝ խառը հանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը (Էդուսկունտա): Կազմված է 19 վարչ. մարզերից: Հավատացյալների մեծ մասը քրիստոնյա (բողոքական) է: Անդամակցում է ՄԱԿ-ին, ԵՄ-ին, ԵԱՀԿ-ին, ԵԽ-ին ևն: Բարձրզարգացած երկիր է: ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 34,9 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է մեքենաներ և սարքավորումներ, թուղթ, թաղանթանյութ, ստվարաթուղթ, քիմիկատներ ևն, ներմուծում նավթամթերք, մեքենաներ և սարքավորումներ, սննդամթերք, մետաղներ ևն: Դրամ. միավորը՝ եվրո:

Մ. թ. I հզ-ամյակի կեսին Ֆ. բնակեցրել են ֆինլանդ. ցեղերը՝ եմերը և սումիները (սումիներ), ավելի ուշ՝ սաամները: 1323-ի Օրեխովեցի (Օրեշեկ) ռուս-շվեդ. հաշտությամբ ժամանակակից Ֆ-ի տարածքն անցել է Շվեդիային: Դանիայի, Նորվեգիայի և Շվեդիայի ունիայի ժամանակաշրջանում Ֆ. ունեցել է ներքին լայն ինքնավարություն: 1522-ից վերստին ընկել է շվեդների տիրապետության տակ: Նիշտադտի հաշտությամբ (1721) Շվեդիան այլ տարածքների հետ Ռուսաստանին է վերադարձրել Հվ-արմ. Կարելիան և Վիբորգը, 1808–09-ի ռուս-շվեդ. պատերազմի հետևանքով Ֆ. միացվել է Ռուսաստանին: Ղրիմի պատերազմից հետո ցար. կառ-յունն ընդլայնել է Ֆ-ի ինքնավար իրավունքները: 1863-ին առաջին անգամ (1809-ից հետո) հրավիրվել է ֆինլանդ. սեյմը, շվեդ-ի հետ պետ. լեզու ճանաչվել է ֆիննե-ը: 1917-ի դեկտ. 6-ին Ֆ-ի խորհրդարանը հռչակել է Ֆ. անկախ պետությունը: 1920-ին Ֆ. և Խորհրդ. Ռուսաստանը կնքել են խաղաղության պայմանագիր: 1939-ի խորհրդա-ֆիննե. պատերազմի արդյունքում Ֆ. ԽՍՀՄ-ին է զիջել տարածքի մի մասը: 1941–44-ին պատերազմել է ԽՍՀՄ-ի դեմ հիտլերյան Գերմանիայի կողմից: 1948-ին ԽՍՀՄ-ի հետ կնքել է բարեկամության, համագործակցության և փոխօգնության պայմանագիր, որը հետագայում մի քանի անգամ երկարացվել է: 1992-ին այն փոխարինվել է հարաբերությունների հիմքերի մասին ռուս-ֆիննե. նոր պայմանագրով: 1995-ից Ֆ. ԵՄ՝ անդամ է, համագործակցում է ՆԱՏՕ-ի հետ տարբեր ծրագրերի շրջանակներում, սակայն պահպանում է ռազմ. դաշինքներին չմիանալու սկզբունքը:

Հայերը Ֆ. գաղթել են ԽՍՀՄ-ից, Մերձ. Արևելքից, Հայաստանից, մասամբ՝ նաև Նորվեգիայից: Բնակվում են Հելսինկիում, Տուրկու և Տամպերե ք-ներում: Նրանց թիվը ներկայում (2016) շուրջ 1200 է:

ՖԻՆԿ (Finck) Ֆրանց Նիկոլաուս (1867–1910), գերմանացի լեզվաբան, հայագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1895), պրոֆ. (1907): Տիրապետել է գրաբարին և աշխարհաբարին: Հիմնադրել է «Հայ բանահյուսության ամսագիր» (1901–04, գերմ.) պարբ-ը: Նրա «Հայերեն նոր գրական լեզվի դասագիրք»-ը (1902, Ստեփան *Դանայանի* հետ) արևելահայ-ի օտարալեզու առաջին ձեռնարկն է: Մանրամասնորեն նկարագրել և հրատարակել է 15 ձեռագիր (Աբգար *Հովհաննիսյանի* հետ) և շարականների 2 ժող. (Հակոբ *Մանանդյանի* և Ե. Գյանջեցյանի հետ), կազմել Թյուբինգենի թագավոր. համալսարանի գրադարանի 104 հայ. ձեռագրերի ցուցակը և նկարագրել դրանք: Հեղինակ է նաև «Ուսումնասիրություն հայկական գնչուերենի մասին» (1907) աշխ-յան: Գերմ. է թարգմանել հայ գրողների գործերից:

ՖԻՆՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ, մերձբալթյան-ֆիննական լեզուներ, ուգրա-ֆիննե. լեզվաընտանիքի արմ. ճյուղը: Ներառում է ֆիննե-ը, էստ-ը, վոդերենը, վեպսերենը, լիվերենը, իժորերենը, կարելերենը:

ՖԻՆՆԵՐ (ինքնանվանումը՝ սուոմալայսետ), ժողղ, Ֆինլանդիայի հիմն. բնակչությունը (շուրջ 5 մլն, 2010): Ապրում են նաև Շվեդիայում (400 հզ.), ԱՄՆ-ում (435,5 հզ.), ՌԴ-ում և այլուր: Լեզուն՝ ֆիննե.: Հավատացյալները բողոքական (լյութերական) քրիստոնյա են:

ՖԻՆՆԵՐԵՆ, *ֆինների* լեզուն: Պատկանում է ուգրա-ֆիննե. լեզվաընտանիքի ֆիննե. ճյուղին: Գրավոր հնագույն հուշարձաններն ավանդվել են XIII–XIV դդ-ից: Գրի հիմքում լատ. այբուբենն է՝ առանց որոշ տառերի:

ՖԻՆՈՋՆԵՐ, տես *Ցիպրիցևրկոզներ*:

ՖԻՆՎԱԼ, ծովատառեխանման կետ, շերտավոր կետաձկների ընտանիքի խոշոր ծով. կաթնասուն: Երկ.՝ 19–20, երբեմն՝ 27 *մ*, կ. զ.՝ մոտ 50 *կգ*: Տարածված է Արկտիկայից մինչև Անտարկտիկա, Հեռավորարլ. և Բարենցի ծովերում: XX դ–ում կետորս. հիմն. ձկներից էր: Այժմ պահպանվում է:

ՖԻՇ Գենադի Սեմյոնովիչ (1903–1971), ռուս. գրող, կինոսցենարիստ: Հեղինակ է բանաստեղծությունների ժող–ների, «Կիմաս լճի նվազումը» (1932) և այլ վիպակների, ՀՄՊ–ին նվիրված գրքերի, սկանդ. երկրների մասին «Բարև, Դանիա» (1959), «Նորվեգիան մեր կողքին է» (1963, հայ.՝ 1982), «Ծվեդների մոտ» (1966), «Նորից Սկանդինավիայի մասին» (հրտ.՝ 1973) ակնարկների ժող–ների, նաև կինոսցենարների («Ուժեղ կամքով աղջիկը», 1939): Հայ. հրատարակվել է «Վեց ժամ շոֆեր Կոյդայի կյանքից» (1942) պատմվածքը:

ՖԻՇԵՐ (Fischer) Բիրգիտ (ծ. 1962), գերմանացի մարզուհի (բայդարկաներով թիավարություն), օլիմպ. խաղերի 8–ակի (1980–2004), աշխարհի 27–ակի (1978–98) չեմպիոնուհի՝ տարբեր անձնակազմերի կազմում:

ՖԻՇԵՐ Էդմոնդ (ծ. 1920), շվեյցարացի կենսաքիմիկոս: 1950–ական թթ–ից՝ ԱՄՆ–ում: Է. Ջ. *Կրեբսի* հետ հայտնագործել է մի շարք ֆերմենտներ, որոնք իրականացնում են սպիտակուցների դարձելի ֆոսֆորիլացումը, հետազոտել այդ շարժընթացի նշանակությունը բջիջներում կենսաքիմ. ռեակցիաների կարգավորման մեխանիզմներում:

Նոբելյան մրց. (1992, Է. Ջ. Կրեբսի հետ):

ՖԻՇԵՐ Էմիլ Հերման (1852–1919), գերմանացի քիմիկոս–օրգանիկ, բնական միացությունների քիմիայի հիմնադիրը: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1913): Սինթեզել է պուրինի մի շարք ածանցյալներ՝ կոֆեինն, գուանին, ադենին ևն, և ուսումնասիրել դրանց կառուցվածքը: Ներդրել է անվանակարգման համակարգը, մշակել է ռացիոնալ դասակարգումը և սինթեզել բազմաթիվ ածխաջրեր: Բացահայտել է ֆերմենտների ազդեցության յուրահատկությունը:

Նոբելյան մրց. (1902):

ՖԻՇԵՐ Էնդրյու (1862–1928), Ավստրալիայի վարչապետը՝ 1908–15–ին (ընդհատումներով): 1907–ից՝ Լեյբորիստ. կուս–յան (հիմն.՝ 1891) առաջնորդը: Եղել է Բրիտ. գաղութ. կայսրության ամրապնդման կողմնակից:

ՖԻՇԵՐ Էռնստ Օտտո (1918–2007), գերմանացի քիմիկոս–օրգանիկ: Բացահայտել և ուսումնասիրել է մետաղօրգ. միացությունների (սենդվիչային) և անցում. մետաղների π–կոմպլեքսների նոր դասեր: Նոբելյան մրց. (1973, Ջ. *Ուիլկինսոնի* հետ):

ՖԻՇԵՐ Հայնց (ծ. 1938), Ավստրիայի դաշն. (2004–16), Ազգ. ընդհ. ժողովի (ասամբլեա, 1990–2002) նախագահ:

ՖԻՇԵՐ Հանս Էյգեն (1881–1945), գերմանացի քիմիկոս–օրգանիկ և կենսաքիմիկոս: Սինթեզել է հեմինը (1929), վերծանել է բիլիռուբինի կառուցվածքը (1931), հաստատել *α* և *β* քլորոֆիլների կառուցվածքը: Նոբելյան մրց. (1930):

ՖԻՇԵՐ Ռոբերտ Ջեյմս (1943–2008), ամերիկացի շախմատիստ, աշխարհի 11–րդ չեմպիոնը (1972–75), միջազգ. գրոսմայստեր (1958): ԱՄՆ բազմակի չեմպիոն (1957–67):

ՖԻՇԵՐ Սվեն (ծ. 1971), գերմանացի մարզիկ (բիաթլոն): Ձմեռ. օլիմպ. խաղերի քառակի (1994, 1998, 2006), աշխարհի 7–ակի (1993–2004) չեմպիոն՝ տարբեր տարածություններում, Աշխարհի գավաթի երկակի հաղթող (1997, 1999):

ՖԻՈԼ (Fiol) Ճվայպոլտ (1479–1525/26–ից հետո), սլավոն առաջին տպագրիչը (ծագումով՝ գերմանացի): 1491–ին Կրակովում կիրիլիցայով տպագրել է 2 Ժամագիրք, 2 Եռականոն սաղմոսագիրք:

ՖԻՉԻՆՈ (Ficino) Մարսիլիո (1433–1499), իտալացի նորպլատոն. փիլ., Ֆլորենցիայի պլատոն. ակադ–ի պարագլուխը: Լատ. է թարգմանել Պլատոնի, Պլոտինի, Յամբլիքոսի, Պրոկլեսի, Պորփյուրի, Մ. Պսելի ստեղծագործությունները, «Արեոպագիտիկաների» մի մասը՝ դարձնելով այն XV–XVI դդ–ի եվրոպ. փիլ–յան ձեռքբերումներից:

ՖԻՋԻ (Fiji), **Ֆիջի Կղզիների Հանրապետություն** (Republic of the Fiji Islands), պետություն Օվկիանիայում: Տարածքը՝ 18,3 հզ. *կմ*^{2}, բն.՝ 944,7 հզ. (2009): Մայրաքաղաքը՝ *Սուվա*: Պետ. լեզուները՝ անգլ., ֆիջիերեն, հինդի: Կառավարման ձևը՝ խորհրդարանահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը (Ներկայացուցիչների պալատ և Սենատ): Կազմված է 4 վարչ. մարզերից և Ռոտումա կղզուց: Հավատացյալների մեծ մասը քրիստոնյա է, կան նաև մահմեդականներ և հնդուականներ: Անդամակցում է ՄԱԿ–ին: Օվկիանիայի համեմատաբար զարգացած երկրներից է: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 3,9 հզ. ԱՄՆ դոլար է (2009): Արտահանում է շաքար, հագուստ, ոսկի փայտանյութ, ձուկ, ներմուծում նավթամթերք, մեքենաներ և սարքավորումներ, սննդամթերք, մետաղներ ևն: Դրամ. միավորը՝ ֆիջիական դոլար:

Կղզիները հայտնաբերել են Ա. *Թասմանը* (1643) և Ջ. *Կուկը* (1774): 1871–ից՝ Ֆ–ի Թագավորություն: 1874–ին կղզիները գրավել են անգլիացիները՝ հայտարարելով այն իրենց գաղութը: Երկիրն անկախություն է ձեռք բերել 1970–ի հոկտ. 10–ին: 1987–90–ին կոչվել է Ֆ–ի Հանրապետություն, 1990–98–ին՝ Ֆ–ի Ինքնիշխան Ժողովրդավար. Հանրապետություն: 1998–ից՝ ներկա անվանումով:

ՖԻՋԻԱՑԻՆԵՐ, մելանեզ. ժողդ, Ֆիջի կղզիների արմատ. բնակչությունը: Ընդհ. թիվը՝ 300 հզ. (2010): Լեզուն՝ ֆիջիերեն: Հավատացյալները բողոքական են:

ՖԻՖՆ (գերմ.՝ Firn – հավերժական ձյուն), խիտ խոշորահատիկ ձյուն, առաջանում է սառցադաշտերի և ձյան սահմանից վերև ձնածածկույթների վրա՝ վերադիր շերտերի ճնշման, մակերևութ. հալոցքների ևնի ազդեցությամբ:

ՖԻՍՀԱՐՄՈՆ (գերմ.՝ Fisharmonium, < հուն. physa – փուքսեր և harmonia – հարմոնիա), ստեղնավոր փող. երաժշտ. գործիք՝ օդամղիչ ոտնակով: Ձայնարտաբերումը՝ մետաղե լեզվակների միջոցով, դիապազոնը՝ մինչև 5 օկտավա: Ֆ–ի ստեղծողը համարվում է Գ. Օ. Գրենիենը (1810, Փարիզ), տերմինը շրջանառել է վիեննացի վարպետ Ա. Հեքլը 1818–ին: Արտաքուստ նման է դաշնամուրին:

ՖԻՏՈ... (հուն.՝ phyton – բույս), բարդ բառերի մաս. ցույց է տալիս առնչությունը բույսերի կամ դրանք ուսումնասիրող գիտ–յան (բուսաբ–յան) հետ (օր.՝ ֆիտոպլանկտոն՝ բուսապլանկտոն):

ՖԻՏՈՒՄՈՒՆԻՏԵՏ, հիվանդությունների և վնասատուների, նաև նրանց կենսագործունեության նյութերի հանդեպ բույսերի անընկալությունը: Պայմանավորված է տեր–բույսի հյուսվածքների և օրգանների կառուցվածքի ձևաբան. առանձնահատկություններով, բջիջներում ալկալոիդների, գլիկոզիդների և 2–րդային փոխանակության այլ նյութերի առկայությամբ, ֆիտոնցիդների առաջացմամբ, ֆերմենտ. համակարգերի և մի շարք այլ գործոնների ակտիվության բարձրացմամբ:

ՖԻՏՈՀՈՐՄՈՆՆԵՐ, քիմ. նյութեր, որոնք արտադրվում են բույսերում և կարգավորում նրանց աճն ու զարգացումը: Գոյանում են հիմնականում արմատների և ցողունների գագաթի ակտիվ աճող հյուսվածքներում: Ֆ–ի շարքն են դասվում *աուքսինները*, *գիբերելինները*, *ցիտոկինինները*, իսկ երբեմն՝ աճման արգելակիչները (ինհիբիտորներ), օր.՝ աբսցիզաթթուն: Ի տարբերություն կենդանիների հորմոնների՝ ավելի նվազ առանձնահատուկ են և հաճախ իրենց գործունեությունը դրսևորում են բույսի նույն հատվածում, որտեղ գոյանում են: Մի շարք սինթետիկ նյութեր ունեն նույն ազդեցությունը, ինչ բնական Ֆ.:

ՖԻՏՈՆԵՄԱՏՈԴՆԵՐ, բուս. օրգաններում ապրող և սնվող կլոր որդերի (նեմատոդներ) էկոլոգ. խումբ: Տես նաև *Կլոր որդեր*:

ՖԻՏՈՆՅԻԴՆԵՐ (< *ֆիտո*... և լատ.՝ caedo – սպանել), բույսերում առաջացող կենսբ. ակտիվ նյութեր, որոնք ընկճում են միկրոօրգանիզմների աճն ու զարգացումը կամ սպանում նրանց: Կարևոր են նաև բույսերի իմունիտետի մշակման համար և կենսահամակեցություններում օրգանիզմների փոխհարաբերություններում: Սոխի, սխտորի, ծովաբողկի պատրաստուկներն օգտագործում են բժշկության մեջ:

ՖԻՏՈՊԼԱՆԿՏՈՆ, մանրադիտակ. բույսերի (գլխավորապես՝ ջրիմուռների) ամբողջություն, որոնք ապրում են ծովի և քաղցրահամ ջրերի հաստության մեջ և դժվար են տեղաշարժվում ջրի հոսանքների ազդեցությամբ:

ՖԻՏՈՑԵՆՈԶ, տես *Բուսական համակեցություն*:

ՖԻՏՈՑԵՆՈԼՈԳԻԱ, բուսաբ–յան բաժին. ուսումնասիրում է ***բուսական համակեցությունները***:

ՖԻՏՈՖՏՈՐԱՅԻՆ ՄՆԿԵՐ, օոմիցետների բաժնի սնկերի ցեղ: Մակաբուծում են բույսերի վրա, առաջացնում են *ֆիտոֆթորոզներ*, որոշ տեսակներ ապրում են նաև որպես սապրոֆիտներ: Հայտնի է մոտ 70 տեսակ՝ տարածված լայնորեն, ՀՀ–ում՝ 3:

ՖԻՏՈՖՏՈՐՈԶՆԵՐ, բույսերի հիվանդություններ, որոնց հարուցիչները *ֆիտոֆթորային սնկերն* են: Ավելի վնասաբեր են կարտոֆիլի և լոլիկի Ֆ.: Տերևների, ցողունների, պալարների պտուղների վրա առաջանում են գորշ բծեր, տերևուքը չորանում է, պալարները և պտուղները նեխում են պահեստարաններում: Նկատվում են նաև ցիտրուս. բույսերի և խնձորենու Ֆ., որոնք բնորոշվում են ոչ միայն բծերի առաջացմամբ, այլև ծառերի կեղևի ճաքերով և խեժահոսությամբ: Տես նաև *Գոմոզ*:

ՖԻՏՉ (Fitch) Վալ Լոգսդեն (1923–2015), ամերիկացի ֆիզիկոս: Աշխ–ները վերա–

բերում են միջուկ. և տարր. մասնիկների ֆիզիկային: Հայտնաբերել է K–մեզոատոմները (1953) և K^0–մեզոնը (1961): 1964–ին Ջ. Ու. *Քրոնինի* հետ բացահայտել է համաչափության խախտումը կոմբինացված ինվերսիայի գործողության նկատմամբ: Նոբելյան մրց. (1980, Ջ. Ու. Քրոնինի հետ):

ՖԻՐԴՈՒՍԻ Աբուլղասիմ (մոտ 940–1020/30), պարսիկ բանաստեղծ: 976–ին շահի պատվերով շարունակել է գրել վաղամեռիկ բանաստեղծ Դաղիղի «Շահնամե» («Աղբայապատում») պոեմը: Այն (1–ին խմբագրությունը՝ 994, 2–րդը՝ սկսած 1010–ից) կազմված է 55 հզ. բեյթից: «Շահնամեում» արտացոլված է Բարու և Չարի պայքարի գաղափարը: Պոեմի պատմ. մասում տեղեկություններ կան նաև հայերի մասին: Ֆ–ուն են վերագրվել մի քանի քնար. բանաստեղծություններ, «Յուսուպ և Զուլեյխա» պոեմը: Էպոսից հայ. հրատարակվել են «Զոհակ Բիւրասպի աժդահակ», «Սիաւուշ» (երկուսն էլ՝ 1894), «Ռոստամ և Սոհրաբ» (1934), «Շահնամե. էպիկական երկ» (1975), «Շահնամէ: Թագաւորների գիրքը» (2001) և այլ երկեր:

ՖԻՐՄԱՆ, Ֆարման (պարսկ.), Իրանի շահերի, Օսմ. կայսրության, Մերձ. և Միջին Արևելքի երկրների սուլթանների հրամանագիրը (հրովարտակ):

ՖԻՐՈՄով Անատոլի Վասիլևիչ (1941–2000), ռուս մարզիկ (տափօղակով հոկեյ), մարզիչ: ԽՍՀՄ ս. վ. վ. (1964): Ձմեռ. օլիմպ. խաղերի (1964, 1968, 1972), աշխարհի, Եվրոպայի, ԽՍՀՄ (բազմակի՝ 1963–73) չեմպիոն:

ՖԻՋՋԵՐԱԼԴ (Fitzgerald) Էլլա (1918–1996), աֆրոամերիկացի ջազ. երգչուհի: Վոկալ իմպրովիզացիայի վարպետ (անվանել են «ջազի առաջին լեդի»): Հանդես է եկել ջազ. երգիչներ Լ. Արմսթրոնգի, Դ. Էլլինգտոնի և ուր. հետ, 1942–ից՝ մենակատար: Հեղինակ է երգերի, ջազ. կոմպոզիցիաների: «Գրեմմի» մրց–ներ:

ՖԻՋԶԵՐԱԼԴ Ֆրենսիս Սքոթ (1896–1940), ամերիկացի գրող: Ամերիկ. գրկ–յան մեջ առաջինն է պատկերել 1920–ական թթ–ի ամերիկ. երիտասարդությանը՝ «կորուսյալ սերնդին» («Դրախտից այն կողմ», 1920, «Գեղեցիկներն ու դատապարտվածները», 1922): Հեղինակ է «Մեծն Գեթսբին» (1925, հայ.՝ 1981), «Գիշերն անույշ է» (1934, հայ.՝ 1981), «Վերջին մագնատը» (1941, անավարտ) վեպերի, «Կործանում» (հրտ.՝ 1946) ինքնակենսագր. ակնարկների ժող–ի:

ՖԻՖԱ (FIFA – Fédération internationale de football association), Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգ. դաշնության ֆրանս. անվան համառոտագրությունը:

ՖԼԱԳՍՏԱԴ (Flagstad) Կիրստեն (1895–1962), նորվեգացի երգչուհի (սոպրանո): 1913–ից՝ Օսլոյի, Նյու Յորքի, Լոնդոնի օպեր. թատրոնների մեներգչուհի (Բրունհիլդա, Իզոլդա՝ Ռ. Վագների «Վալկիրիա», «Տրիստան և Իզոլդա», Լեոնորա՝ Լ. վան Բեթհովենի «Ֆիդելիո», ևն): Օսլոյի «Նորվեգական օպերա» թատրոնի ղեկ. (1958–60):

ՖԼԱՄԱՆԴԱՑԻՆԵՐ, ժողդ Բելգիայի հս–ում (6,2 մլն, 2006): Ապրում են նաև Ֆրանսիայի հս–արլ–ում (250 հզ., 2007), Նիդեռլանդների հվ–արմ–ում (130 հզ.) և այլուր: Ընդհ. թիվը՝ 7,23 մլն (2015): Լեզուն՝ ֆլամանդ.: Հավատացյալները կաթոլիկ են:

ՖԼԱՄԱՆԴԵՐԵՆ, Բելգիայի պետ. լեզուներից (ֆրանս–ի հետ): Նիդեռլ. լեզուների պայման. և ավանդ. անվանումը Բելգիայում: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի գերմ. ճյուղի արմ. ենթաճյուղին: Գրի հիմքում լատ. այբուբենն է:

ՖԼԱՄՄԱՐԻՈՆ (Flammarion) Կամիլ (1842–1925), ֆրանսիացի աստղագետ: Ֆրանս. աստղագիտ. ընկ–յան հիմնադիրը (1887): Հեղինակ է աստղագիտ. գիտահանրամատչելի գրքերի: Ուսումնասիրել է Մարսը, Լուսինը, կրկնակի աստղերը:

ՖԼԱՄԻՆԳՈՆԵՐ (Phoeniceopteridae), ֆլամինգոնմանների կարգի թռչունների ընտանիք: Երկ.՝ 91–120 *սմ*: Փետրազգեստը վարդագույն է, թևերը՝ մուգ վարդագույն: Հայտնի է 5 տեսակ, ՀՀ–ում՝ 1՝ սովոր. ֆլամինգոն. հանդիպում է գարնան. և աշնան. չուի ընթացքում՝ Սևանա լճի և Արարատյան դաշտի ձկնաբուծ. տնտ–յուններում: Առաջին հավաստի բնադրումը հաստատվել է 1994–95–ին, ապա՝ 2000–02–ին: Որսն արգելված է: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում: Առաջն. չվահյուր է, հազվագյուտ: Կեր է որոնում ծանծաղուտներում: Մնվում է միջատներով, խխունջներով:

ՖԼԱՎԻՆ (լատ.՝ flavus – դեղին), եռօղակ տարացիկլիկ մոլ–ի՝ իզոալօքսազինի հիման վրա առաջացած օրգ. միացությունների խումբ: Ֆ–ի կենսաքիմ. աղբյուրը B_2 վիտամինը՝ ռիբոֆլավինն է:

ՖԼԱՎԻՆԱԴԵՆԻՆԵՐԿՆՈՒԿԼԵՈՏԻԴ, օրգ. միացություն, B_2 վիտամինի (ռիբոֆլավին) ածանցյալը, մի շարք ֆերմենտների (դեհիդրոգենազ ևն) ոչ սպիտակուց. մասը, կատալիզում է օրգանիզմի օքսիդավերականգնման ռեակցիաները:

ՖԼԱՎՐՆՄՈՆՈՆՈՒԿԼԵՈՏԻԴ, որոշ ֆերմենտների ոչ սպիտակուց. մասը (կոֆերմենտ), կատալիզում է կենդանի բջիջների օքսիդավերականգնման ռեակցիաները: *Ֆլավինադենիներկնուկլեոտիդի* կենսաքիմ. նախորդը:

ՖԼԱՎՈՆՈԻԴՆԵՐ, բնական ֆենոլ. միացությունների խումբ, որոնք պարունակվում են բարձրակարգ բույսերում (հիմնականում՝ գլիկոզիդների ձևով): Բազմաթիվ Ֆ. գունանյութեր են, որոնք բուս. հյուսվածքները գունավորում են տարբեր գույներով (օր.՝ անատոցիանները՝ կարմիր, կապույտ, մորեգույն), անգույն կատեխինները և լեյկոանատոցիանները՝ բնական դարաղանյութերի սկզբնանյութերն են: Օգտագործվում են որպես ներկանյութեր, սննդ. հակաօքսիդանտներ, դարաղանյութեր և բժշկության մեջ:

ՖԼԵԳՄԱՏԻԿ (հուն.՝ phlegma – լորձ), ըստ Հիպոկրատի դասակարգման՝ 4 խառնվածքներից մեկի անվանումը, որը բնորոշվում է դանդաղկոտությամբ, հանդարտությամբ, զգացմունքների թույլ դրսևորմամբ:

ՖԼԵԳՄՈՆԱ (հուն.՝ phlegmone – շոգ, բորբոքում), ենթամաշկ., միջնկան. բջջանքի թարախ. բորբոքում՝ առանց պարզորոշ սահմանների: Դրսևորվում է ցավոտ ուռածությամբ, մաշկի կարմրությամբ, շրջապատող հյուսվածքների այտուցով, մոտակա ավշահանգույցների բորբոքումով:

ՖԼԵԹՉԵՐ (Fletcher) Ջոն (1579–1625), անգլիացի դրամատուրգ: Պիեսների մեծ մասը գրել է Ֆ. Բոմոնթի («Ֆիլաստր», «Աղջկա ողբերգությունը», «Թագավոր և ոչ թագավոր», բոլորը՝ 1611, ևն) և Ֆ. Մասսինջերի («Ֆրանսիացի փոքրիկ պաստաբանը», 1619, ևն) հեղինակակցությամբ, որոնց հետ սկզբնավորել է ողբերգատակերգության ժանրը: Ֆ–ի ինքնուրույն գործերից են՝ «Խելք՝ առանց փողի» (1614), «Պարոն Թոմասը» (1615), «Ինչպես կառավարել կնոջը» (1624) ևն:

ՖԼԵՄԻՆԳ (Fleming) Ալեքսանդր (1881–1955), անգլիացի մանրէաբան: Աշխ–նեը վերաբերում են իմունաբանությանը, ընդհ. բակտերիաբանությանը, քիմիաբուժությանը: Բացահայտել է (1922, այլ տվյալներով՝ 1921) բակտերիան «լուծող» լիզոցիմ ֆերմենտը, հաստատել (1929), որ բորբոսասնկերի տեսակներից մեկն արտադրում է հակաբակտեր. նյութ, որն անվանել է *պենիցիլին*: Նոբելյան մրց. (1945, Հ. Ու. *Ֆլորիի* և Է. Բ. *Չեյնի* հետ):

ՖԼԵՄՍՏԻԴ (Flamsteed) Ջոն (1646–1719), անգլիացի աստղագետ: Գրինվիչի աստղադիտարանի հիմնադիր–տնօրենը (1675–ից): Կազմել է Լուսնի շարժման աղյուսակներ (1673), մոտ 3 հզ. աստղերի դիրքերի աստղացույց (հրտ.՝ 1712–25) և աստղ. քարտեզ (հրտ.՝ 1729):

ՖԼԵՅՏԱ (իտալ.՝ flauto), փայտե փող. երաժշտ. գործիք: Պատմ. նախատիպը Պանի Ֆ.է: Կատարելագործել է գերմանացի վարպետ Թ. Բյոմը 1930–ական թթ–ին: Տարբերում են Ֆ–ի ուղղաձիգ, հորիզոն., նաև փոքր (պիկոլո Ֆ.), ալտային, բասային տեսակները: Մենանվագ, անսամբլ. և նվագախմբային գործիք է:

ՖԼԵՇ–ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ (անգլ.՝ flash – բռնկում), կիսահաղորդչ. էներգիաանկախ հիշողության սարք, որը հնարավորություն է տալիս վերագրանցելու տեղեկույթը: Կիրառվում է համակարգիչներում, թվային լուսատեսախցիկներում, խոսաձայնագրիչներում և այլուր: Լայնորեն տարածվել են փոխովի USB ֆլեշ–կուտակիչները, այսպես կոչված ֆլեշկաները՝ 32 *Մբայթ*–256 *Գբայթ* ծավալով:

ՖԼԻԵՐ Յակով Վլադիմիրովիչ (1912–1977), ռուս. դաշնակահար (ծագումով՝ հրեա): ԽՍՀՄ ժող. արտիստ (1966): Երկացանկում՝ Ֆ. Լիստի, Ֆ. Շոպենի, Ռ. Շումանի, Ս. Վ. Ռախմանինովի և ուր. երկերից: Ֆ–ի սաներից է Սամվել *Արումյանը*: Համամիութ. II (1935, Լենինգրադ), Դաշնակահարների միջազգ. (1–ին մրց–ներ) և Է. Իզաիի անվ. (3–րդ մրց., Բրյուսել, 1938) մրցույթների դափնեկիր:

ՖԼԻՆԴԵՐՍ (Flinders) Մեթյու (1774–1814), Ավստրալիայի անգլիացի հետազոտող: 1797–1803–ին ղեկավարել է ծով. 3 արշավ, շրջանցել է ամբողջ մայրցամաքը, քարտեզում նշել Մեծ արգելախութը, Կարպենտարիայի ծոցը, հայտնագործել մի շարք այլ ծոցեր: 1814–ին մայրցամաքի համար առաջարկել է Ավստրալիա անվանումը (Նոր Հոլանդիայի փոխարեն):

ՖԼԻՆԴԵՐՍ, գետ Ավստրալիայի հս–ում: Երկ.՝ 830 *կմ*, ավազանը՝ 108 հզ. $կմ^2$, ջրի միջին ծախսը՝ 16 $մ^3/վ$: Թափվում է Կարպենտարիայի ծոցը: Կոչվել է Մ. *Ֆլինդերսի* անունով:

ՖԼՅՈՐՈՎ Գեորգի Նիկոլաևիչ (1913–1990), ռուս. ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1968): Սոց. աշխ. հերոս (1949): Հայտնաբերել է ծանր միջուկների ինքնաբաժանման երևույթը (1940, Կ. Ա. *Պետրժակի* հետ): Ֆ–ի ղեկավարությամբ սինթեզվել և հետազոտվել են 102–107 համարներով տարրերի իզոտոպները: Գլխավորել է գերծանր տարրերի սինթեզի հետազոտությունները՝ բազմալիցք

իոնների արագացուցչում: Մասնակցել է ԽՍՀՄ-ում ատոմ. ռումբի ստեղծմանը:

ԽՍՀՄ Պետ. (1946, 1949, 1975), Լենինյան (1967) մրց-ներ:

ՖԼՅՈՒՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ռենտգենաֆլյուորագրություն, ռենտգենախտորոշման եղանակ, երբ լուսարկվող էկրանից լուսանկարահանվում է ոչ մեծ չափերի հետազոտվող օրյեկտի ստվերային պատկերը լուսանկարչ. ժապավենի վրա: Կիրառվում է թոքերի հիվանդությունների հայտնաբերման համար, հատկապես՝ զանգված. հետազոտությունների ժամանակ:

ՖԼՅՈՒՈՐՈՍ (լատ.՝ fluorum – ֆտոր), ոսկր. համակարգի և ատամների քրոնիկ. հիվանդություն՝ ***ֆտորի*** և նրա միացությունների երկարատև ավելցուկ. քանակությունն օրգանիզմ մուտք գործելու հետևանքով: Ախտանշանները՝ ոսկրերի կարծրախտ, ատամների արծնի հիպոպլազիա ևն:

ՖԼՈՔԵՐ (Flaubert) Գյուստավ (1821–1880), ֆրանսիացի գրող: Հեղինակ է «Տիկին Բովարի: Գավառական բարքեր» (1857, հայ.՝ 1937), «Խելագարի հուշագրություններ» (1838, հայ.՝ 1914), «Զգացական դաստիարակություն» (1869, հայ.՝ 1982), «Մալամբո» (1862, հայ.՝ 1959), «Հերովդիաս» (1877, հայ.՝ 1927) վեպերի, «Սուրբ Անտոնիոսի գայթակղությունը» (1874, հայ.՝ 1998) փիլ. դրամատիկ. արձակ պոեմի, «Երեք վիպակ» (1877, հայ.՝ «Երեք նովել», 1892) ժող-ի, «Բուվարը և Պեկյուշեն» (հրտ.՝ 1881, անավարտ) երգիծավեպի:

ՖԼՈԳԻՍՏՈՆ (հուն.՝ phlogistos – այրելի), «այրելիության սկիզբը» XII–XVIII դդ-ի քիմիկոսների պատկերացումներով. նյութի ենթադրելի բաղադրամաս, որը նյութը կորցնում է այրվելիս և թրծման ժամանակ: Ֆ-ի վարկածը հերքել է Ա. ***Լավուազիեն***:

ՖԼՈՏԱՑԻՈՒՄ (ֆրանս.՝ flottation, < flotter – լողալ ջրի մակերեսին), մանր, պինդ մասնիկների (հիմնականում՝ միներալների) բաժանման և էմուլսիայից դիսպերս ֆազի զատման շարժընթաց: Հիմնված է մասնիկների՝ հեղուկով (հիմնականում՝ ջրով) թրջելիության տարբերությունների վրա: Իրականացվում է հատուկ նյութերի՝ ֆլոտոռեագենտների (հիմնականում՝ ՄԱՆ-ի) կիրառումով: Օգտ. հանածոների հարստացման համար լայնորեն կիրառվում է փրփր. Ֆ.:

ՖԼՈՐԱ, ծաղիկների և զարնան. զարթոնքի աստվածուհին հռոմ. դից-յան մեջ:

ՖԼՈՐԱ (լատ.՝ Flora – ծաղիկների և գարնան աստվածուհի), բույսերի տեսակների պատմականորեն ձևավորված ամբողջություն, որոնք զբաղեցնում են որևէ տարածք կամ այն զբաղեցրել են անցյալ երկրբ. դարաշրջաններում:

ՖԼՈՐԵՆՍԿԻ Պավել Ալեքսանդրովիչ (1882–1937), ռուս ուղղափառ աստվածաբան-փիլ., ֆիզիկոս, մաթեմատիկոս, ճարտարագետ, քհն. (1911): «Հիմնասյուն և ճշմարտության հաստատումը» (1914) աշխ-յան մեջ մշակել է ուսմունք Սոֆիայի (Աստծու գերիմաստության) մասին՝ որպես տիեզերքի իմաստավորություն և ամբողջություն: 1912–17-ին խմբագրել է «Богословский вестник» (ռուս., «Աստվածաբանական տեղեկագիր») հանդեսը: 1920-ական թթ-ի երկրորդ կեսին ձգտել է կառուցել «կոնկրետ մետաֆիզիկա»: 1933-ին հանիրավի բռնադատվել է, պահվել Սոլովեցկյան ճամբարում, գնդակահարվել:

ՖԼՈՐԵՆՑԻԱ (Firenze), ք. Իտալիայում, Տոսկանա մարզի և Ֆլորենցիա պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 379 հզ. (արվարձաններով՝ շուրջ 871 հզ., 2014): Տրանսպորտ. հանգույց է, Իտալիայի նորաձևության կենտրոններից: Ունի համալսարան (հիմն.՝ 1321), պատկերասրահ, գիտ-յունների և գրկ-յան, գեղարվ-ի ակադ-ներ, գրադարան, կոնսերվատորիա: Հիմնադրել են հռոմեացիները մ. թ. ա. I դ-ում: Նշանավոր են Վերածննդի ժամանակաշրջանի կառույցները՝ Սան Ջովաննի մկրտատունը (օծվել է 1059-ին), Սանտա Մարիա դել Ֆիորե տաճարը (XIII դ-ից), Սան Մինիատո ալ Մոնտե (XI–XIII դդ.), Սանտա Մարիա դել Կարմինե (XIII–XVIII դդ.), Սանտա Մարիա Նովելլա (XIII–XVI դդ.) ևն եկեղեցիներ, պալատներ (Պիտտի, Մեդիչի Ռիկարդի, Ռուչելլայի, բոլորը՝ XV դ.): Պատմ. կենտրոնը Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է:

ՖԼՈՐԵՆՑԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Եվրոպայի հնագույն համալսարաններից: Հիմնադրվել է 1321-ին Իտալիայում: 2015-ին ուներ շուրջ 60 հզ. ուսանող:

ՖԼՈՐԻ (Florey) Հաուարդ Ուոլտեր (1898–1968), անգլիացի ախտաբան: Լոնդոնի թագավոր. ընկ-յան անդամ (1941) և նախագահ (1960–65): ԽՍՀՄ ԳԱ արտ. անդամ (1966): Հետազոտել է մաքրված ***պենիցիլինի*** բուժիչ հատկությունները և առաջինը կիրառել այդ պատրաստուկը: Նորելյան մրց. (1945, Ա. ***Ֆլեմինգի*** և Է. Բ. ***Չեյնի*** հետ):

ՖԼՈՐԻ (Flory) Պոլ Ջոն (1910–1985), ամերիկացի ֆիզքիմիկոս: Պոլիկոնդենսման տեսության հիմնադիրներից: Աշխ-ները վերաբերում են պոլիմերների լուծույթների տեսությանը և ֆիզքիմ. հատկություններին, մակրոմոլ-ների վիճակագր. ֆիզիկային: Նորելյան մրց. (1974):

ՖԼՈՐԻԴԱ, (Florida), թ-կղզի Հս. Ամերիկայի (ԱՄՆ) հվ-արլ-ում: Տարածքը՝ 115 հզ. *կմ*²: Ցածր, ճահճացած հարթավայր է: Բարձր.՝ մինչև 99 *մ*: Մեծ մասն զբաղեցնում է համանուն նահանգ-ը: Հվ-ում ստեղծվել է Էվերգլեյդս ազգ. պարկը: Արդյունահանում են ֆոսֆորիտներ: Արլ. ափին են Մայամի, Վեստ Պալմ Բիչ և այլ կլիմ. առողջարաններ: Կանավերալ հրվանդանում և Մերիտ կղզում է Ջ. Քենեդիի անվ. տիեզ. կենտրոնը:

ՖԼՈՐԻԴԱ, նահագ ԱՄՆ-ի հվ-արլ-ում: Տարածքը՝ 151,7 հզ. *կմ*², բն.՝ 20,2 մլն (2015): Վարչ. կենտրոնը՝ Թալահասի:

ՖԼՈՐԻԴԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ԱՄՆ-ի խոշորագույն բուհերից: Հիմնադրվել է 1853-ին Հեյնսվիլ ք-ում (Ֆլորիդա նահագ): 2016-ին ուներ շուրջ 50 հզ. ուսանող: Հայտնի է Ֆ. հ-ի բնության թանգարանը (հիմն.՝ 1891), որտեղ պահվում է նաև թիթեռների՝ աշխարհում ամենամեծ հավաքածուն (շուրջ 6 մլն ցուցանմուշ):

ՖԼՈՐԻԴԱՅԻ ՆԵՂՈՒՑ, Ֆլորիդա թ-կղզու, Կուբա և Բահամյան կղզիների միջև: Կապում է Մեքսիկ. ծոցն Ատլանտ. օվկ-ին: Երկ.՝ 651 *կմ*, նվզգն լայն.՝ 80 *կմ*, խոր.՝ 150–2085 *մ*: Գլխ. նվինգստ-ները՝ Հավանա (Կուբա), Մայամի (ԱՄՆ):

ՖԼՈՐԻՄ (Floris, Դե Բրինդ) Կոռնելիս (1514–1575), նիդեռլանդացի ճարտ., քանդ.: Կառույցներում (ռատուշան՝ Անտվերպենում, 1561–65, ևն) զուգակցել է Վերածննդի ճարտ-յան ձևերն ու նիդեռլ. գոթ. ոճի ավանդույթները, ստեղծել զարդաքանդակման սեփ. ոճ: Եղբայրը՝ **Ֆրանս Ֆ.** (1519/20–1570), գեղանկարիչ, փորագրող, նիդեռլ. ռոմանտիզմի վարպետ («Հրեշտակների անկումը», 1554):

ՖԼՈՐԻՍՏԻԿԱ, բուսաբ-յան բաժին. զբաղվում է երկրագնդի կամ նրա առանձին մասերի ֆլորան կազմող բուսատեսակների ուսումնասիրությամբ և կարգաբան. նկարագրությամբ: Ֆ-ի տվյալները կարևոր են ***խորոլոգիայի*** և բույսերի աշխարհագրության համար:

ՖԼՈՐԻՍՏԻԿԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՈՒՄ, Երկրի մակերևույթի բաժանումը համաստորադաս շրջանների, որոնք միմյանցից տարբերվում են հիմնականում բույսերի բնաշխարհիկ տաքսոնների կազմով և ֆլորայի ձևավորման ու զարգացման պատմությամբ: Առանձնացնում են 6 ֆլորիստիկ. թագավորություններ (Հոլարկտիկ., Պալեոտրոպիկ., Նեոտրոպիկ., Կապի, Ավստրալ., Հոլանտարկտիկ.), 34–37 մարզ, մոտ 15 նահագ, որոնք առաջացնում են Երկրի բուս. աշխարհի տեղաբաշխման համակարգ: Երբեմն առանձնացնում են նաև 1՝ Օվկիանոս. թագավորությունը, որն ընդգրկում է ամբողջ Համաշխ. օվկ-ը: Ժամանակակից աշխարհի բուսաաշխարհագր. շրջանացման գործում լուրջ ավանդ ունի Ա. Լ. ***Թախտաջյանը*** («Երկրի ֆլորիստական շրջանները», 1978), ըստ որի՝ Հայաստանի տարածքը մտնում է Կովկաս. պրովինցիայի կազմի մեջ:

ՖԼՈՐԻՎԱԼ (Florival) Պոլ Էմիլ լը Վայան (Լը Վայան) դը (1800–1862), ֆրանսիացի հայագետ: Փարիզի Արլ. կենդանի լեզուների դպրոցում աշակերտել է Հակոբ Շահան ***Ջրպետյանին***: Եղել է ՎնտՄՄ հայկ. ճեմարանի անդամ: Ֆրանս. է թարգմանել (1841) Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկը, որի առաջաբանում հակիրճ ուրվագծել է հայ մատենագրության պատմությունը, նշել նրա դերը համաշխ. գրկ-յան մեջ, Մարգար Խոճենցի (Գեղամյան) վիպակներից, Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» (1853) երկը և այլ գործեր: Գրել է նաև Կ. Պոլսի կաթոլիկ հայերի հալածանքի մասին, համառոտակի շարադրել ՄՄ պատմությունը, անդրադարձել V դ-ի հայ փիլ. մտքին:

ՖԼՈՒԿՏՈՒԱՑԻԱ (լատ.՝ fluctuatio – տատանում), ֆիզ. մեծությունների պատահական շեղումներն իրենց միջին արժեքներից. կատարվում է պատահական գործոններից կախված ցանկացած մեծության համար: Փակ թերմոդինամիկ. հավասարակշռված համակարգի Ֆ-ներն առաջանում են մասնիկների ջերմ. շարժումների ազդեցությամբ: Կան նաև էլ. Ֆ-ներ՝ հաղորդիչներում հոսանքի լարվածության պատահական փոփոխություններով պայմանավորված:

ՖԼՈՒԿՏՈՒԱՑԻԱՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ աստղաֆիզիկայում, տիեզ. համակարգերում նյութի՝ ոչ անընդհատ բաշխումով պայմանավորված խտության ֆլուկտուացիաների տեսություն: Օր.՝ ***աստղակույտերի*** կամ ***գալակտիկանների*** զանգվածը գլխավորապես կուտակված է աստղերում և միգամածություններում, որոնց տրամագծերը չնչին են համակարգերի չափերի համեմատությամբ: Խտության նշված ֆլուկտուացիաները համակարգում առաջ են բերում ձգողության դաշտի ֆլուկտուացիաներ, որոնց

հետևանքով առաջանում են աստղերի ուղեծրերի խանգարումներ։ Ֆ. տ–յան մեկ այլ խնդիր վերաբերում է մեր Գալակտիկայում աստղերի լույսի կլանմանը, որի պատճառը տիեզ. փոշին է։ Այն բաշխված է Գալակտիկայում ոչ թե անընդհատ, այլ առանձին փոշեամպերի տեսքով։ Դրա հետևանքով, լույսի ընդհատ կլանումը Գալակտիկայում նույնպես տեղի է ունենում զգալի ֆլուկտուացիաներով։

ՖԼՈՒՈՐԵՍՑԵՑԻՆ, քսանտենային ներկանյութ, դեղին բյուրեղներ են, ջրում վատ են լուծվում, $t_{հալ.}$՝ 314–316°C (քայքայվելով), ջր. լուծույթներում առաջացնում է ուժեղ դեղնականաչավուն ***ֆլուորեսցևնտում*** (այստեղից՝ անվանումը)։ Ֆ–ի նատրիումական աղն ինտենսիվ կանաչ ֆլուորեսցենտման (նկատելի է $1 : 4 \cdot 10^7$) շնորհիվ կիրառում են ջր. հոսքերի ուղղորդման ուսումնասիրման ժամանակ։

ՖԼՈՒՈՐԵՄԵՑԵՆՑՈՒՄ, գրգռման դադարից հետո կարճ ժամանակահատվածում մարող լուսարձակում։ Որպես կանոն՝ առաջանում է մոլ–ների կամ ատոմների ինքնակամ քվանտ. անցումների ժամանակ, այդ պատճառով Ֆ. որոշվում է դրանց գրգռված վիճակների կյանքի տևողությամբ։

ՖԼՈՒՐԱՆՍ (Flourens) Պիեռ Ժան Մարի (1794–1867), ֆրանսիացի ֆիզիոլոգ և բժիշկ։ Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1856)։ Հետազոտել է գլխուղեղի կիսագնդերի և ուղեղիկի ֆունկցիաները, երկարավուն ուղեղում բացահայտել (1822) շնչառ. կենտրոնը։

ՖՅՈՆ, լ–ներից փչող տաք ու չոր պոռթկուն քամի։ Առաջանում է լ–շղթայի տարբեր լանջերին օդի ջերմաստիճանի և ճնշման մեծ տարբերության հետևանքով։ Հողմահակառակ լանջով իջնելիս կատարվում է հակառակը՝ օդը դառնում է ավելի տաք ու չոր։ Զմռանը Ֆ., իջնելով ձյունածածկ լանջերից, առաջացնում է արագ ձնհալք, որի պատճառով այն հաճախ անվանում են «ձյուն խժռող» քամի։ ՀՀ–ում Ֆ. բնորոշ է Աղստևի հովտին, Սևանա լճի ավազանին և Զանգեզուրին։

ՖՅՈՐՍՏԵՐ (Foerster) Օտֆրիդ (1873–1941), գերմանացի նյարդախտաբան, նյարդավիրաբուժության հիմնադիրներից Գերմանիայում։ Աշխ–ները վերաբերում են ուղեղ. գործառույթների տեղայնացմանը, ընկնավորության վիրաբուժ. բուժմանը, բրգային համակարգի ախտահարումների ախտանշանաբանությանը։ Առաջիններից է գործն. կլինիկայում կիրառել փոքրոքագրությունը (վենտրիկուլոգրաֆիա), էլեկտրաուղեղագրությունը։ 1922–24–ին մասնակցել է Վ. Ի. *Լենինի* բուժմանը։

ՖՅՈՒՉԵԼԱԺ (ֆրանս.՝ fuselage, < fuseau – իլիկ), թռչող սարքի իրանը։ Իրար է միացնում թևերը, ուղղյակները և (երբեմն) շասսին։ Ֆ–ում սովորաբար տեղավորվում են անձնակազմը, ուղևորները, բեռները և սարքավորումները։

ՖՅՈՒՆԵՍ (Funès) Լուի դը (1914–1983), ֆրանսիացի կինոդերասան։ Որպես կատակերգակ՝ օգտագործել է բուֆֆոնադի հնարքներ, ֆարսի կերպարներին բնորոշ դիմախաղ։ Նկարահանվել է «Հայրիկը, մայրիկը, աղախինը և ես», «Սատանան և տասը պատվիրանները», «Բերանբացը», «Ֆանտոմաս», «Մեծ զբոսանք», «Ժլատը», «Ժանդարմը Սան–Տրոպեից» և այլ ֆիլմերում։ Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» շքանշան (1973)։

ՖՈ (Fo) Դարիո (1926–2016), իտալացի դրամատուրգ, դերասան, ռեժ.։ 1968–ին հիմնադրել է «Նուովա սցենա» (իտալ.) թատրոնը, 1970–ին՝ «Կոմունե» (իտալ.) շրջիկ թատերախումբը։ Հեղինակ է աստվածաշնչ. սյուժեներով «Հրեշտակապետները չեն խաղում ֆլիպեր» (1959), «Միստերիա–բուֆ» (1969) կատակերգությունների, «Անարխիստի պատահական մահը» (1971), «Հռոմի պապը և վհուկը» (1989) և այլ պիեսների։ Նոբելյան մրց. (1997)։

…ՖՈԲ, …***ֆոբիա*** (հուն.՝ phobos – վախ, սարսափ), բարդ բառերի մաս. ցույց է տալիս վախ ինչ–որ բանից (օր.՝ կլոստրոֆոբիա, հիդրոֆոբիա), որևէ մեկի կամ որևէ բանի հանդեպ անհանդուրժողականություն (օր.՝ ***քսենոֆոբիա***)։

ՖՈԲԻԱՆԵՐ, սևեռուն վախեր, ***սևեռուն վիճակների*** տարատեսակներ (օր.՝ ագորաֆոբիա՝ վախ բաց տարածություններից)։

ՖՈԲՈՍ (հուն.՝ phobos – վախ), ***Մարսի*** մոտակա արբանյակը։ Հայտնաբերել է Է. ***Հոլլը*** 1877–ին։ Ոչ կանոնավոր ձևի մարմին է. չափերը մոտավորապես՝ 26 x 22 x 18 *կմ*, զանգվածը՝ $\approx 10{,}7 \cdot 10^{15}$ *կգ*, պտտման պարբերությունը՝ 7 *ժ* 39 *ր*, հեռ. Մարսի կենտրոնից՝ ≈9,4 հզ. *կմ*։

ՖՈԳԵԼ (Fogel) Հերման Կառլ (1841–1907), գերմանացի աստղագետ։ Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1892)։ Հիմնադրել է Պոտսդամի աստղաֆիզ. աստղադիտարանը (1882)։ Հրատարակել է (1882) 7,5 մեծության աստղերի առաջին սպեկտրադիտ. աստղացույցը։

ՖՈԳԵԼ Ռոբերտ Ուիլյամ (1926–2013), ամերիկացի տնտեսագետ։ Ֆ–ի կարծիքով՝ արդ–յան մեջ ոչ մեծ նորարարությունները ավելի շատ են նպաստում նրա զարգացմանը, քան խոշոր տեխնոլոգ. պոռթկումները։ Պատմ. իրադարձությունների ուսումնասիրման ժամանակ օգտագործել է տնտեսագիտ. տեսությունն ու քանակ. մեթոդները։ Նոբելյան մրց. (1993, Դ. Ս. *Նորթի* հետ)։

ՖՈԳՏ (Vogt) Հանս (1903–1986), նորվեգացի լեզվաբան, կովկասագետ։ Հեղինակ է «Դիտողություններ հայերենի բաղաձայնական համակարգի մասին» (1958), «Հայերենը և վրացերենը. ենթաշերտի ազդեցությունը և տարամետ զարգացումը» (1961), «Անվանական խմբերը հայերենում և հին վրացերենում» (1932) և այլ հոդվածների։

ՖՈԼԱԹՈՒՐ, B_9 **վիտամին**, ջրալույծ վիտամին, որն անհրաժեշտ է արյունատար և իմուն. համակարգի զարգացման համար։ Վիտամիններ են նաև Ֆ–ի ածանցյալները։ Ստացվում է հիմնականում սննդի հետ։ Մննդամթերքում Ֆ–ի պակասության դեպքում ավելացվում է։

ՖՈԼԳԱ (լեհ.՝ folga, գերմ.՝ Folie, լատ.՝ folium – թերթ), **նրբաթիթեղ**, տարբեր մետաղներից և համաձուլվածքներից (Al, Sn, Pb, Sn–Pb ևն) պատրաստված բարակ (2–100 *մկմ*) թերթեր կամ ժապավեններ։ Սակաշերտ. Ֆ. այրումինապատված թղթե ժապավեն է։ Ստանում են գլոցմամբ, էլեկտրոլիտիկ եղանակով, վակուումում ենթաշերտի վրա նստեցնելով։

ՖՈԼԻԿՈՒԼ, (folliculus – պարկիկ, պատճուկ), բշտիկանման գոյացություն ողնաշարավորների օրգաններում, որոնք տարբեր ֆունկցիաներ են կատարում (օր.՝ ձվարանի հասուն Ֆ. պարունակում է ձվաբջիջ, վահանաձև գեղձի Ֆ.՝ հորմոնների վերջն. սինթեզման տեղ)։

ՖՈԼԿԼԵՆԴՅԱՆ (ՄԱԼՎԻՆՅԱՆ) ԿՂԶԻՆԵՐ (անգլ.՝ Falkland Islands, իսպ.՝ Islas Malvinas), Ատլանտ. օվկ–ի հվ–արմ–ում, Մեծ Բրիտանիայի տիրույթ։ Տարածքը՝ 12,2 հզ. *կմ*², բն.՝ 3,4 հզ. (2016)։ Բարձր.՝ մինչև 706 *մ*։ Վարչ. կենտրոնը և միակ քաղաքը՝ Պորտ Սթենլի (Պուերտո Արխենտինո)։ Հայտնագործել են եվրոպացիները XVI դ–ում, գաղութացվել է 1764–ից։ XIX դ–ում անցել են Արգենտինային, 1833–ից՝ անգլիացիներին։ Արգենտինան չի ճանաչում բրիտ. գերիշխանությունը կղզիների նկատմամբ՝ համարելով նրանք իր տարածքը։ 1982–ին, Արգենտինայի հետ զինված հակամարտության արդյունքում, Մեծ Բրիտանիան վերականգնել է կղզիների նախկին կարգավիճակը։

ՖՈԼՔՆԵՐ (Faulkner) Ուիլյամ (1897–1962), ամերիկացի գրող։ Հեղինակ է «Ձինվորական պարգև» (1926), «Սարթորիս» (1929, հայ.՝ 2000), «Շառաչ և ցասում» (1929, հայ.՝ 2003), «Մահվան մահճում» (1930), «Լույս օգոստոսին» (1932), «Աբիսողոմ, Աբիսողոմ» (1936, հայ.՝ 2003), «Առակ» (1954) և այլ վեպերի, «Գյուղակը» (1940), «Քաղաքը» (1957), «Առանձնատունը» (1959) եռերգության, «Ահյուն պղծողը» (1948) յուրօրինակ դեդեկտիվ վեպի, «Այդ տասներեքը» (1931), «Իջիր, Մովսես» (1942) պատմվածքների, «Մարմարե այծամարդը» (1924) բանաստեղծությունների ժող–ների։ Հայ. հրատարակվել են նաև «Լրիվ շրջադարձ» (1965) պատմվածքը, «Չոր սեպտեմբեր» (1991) պատմվածքների ժող–ը, «Արջը» (1992) վիպակը, «Ես այնժամ՝ դեռ մահամերձ» (2017) վեպը։ Նոբելյան մրց. (1949)։

ՖՈԿ Վլադիմիր Ալեքսանդրովիչ (1898–1974), ռուս. ֆիզիկոս–տեսաբան։ ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939)։ Սոց. աշխ. հերոս (1968)։ Աշակել է դաշտի ինքնահամաձայնեցման մեթոդը բազմաէլեկտրոն. համակարգերի համար, երկրորդ. քվանտացման մեթոդը։ Ուսումնասիրությունները վերաբերում են ռադիոալիքների տարածմանը, մաթ. ֆիզիկային, ֆիզիկայի փիլ. հարցերին։ ԽՍՀՄ Պետ. (1946), Լենինյան (1960) մրց–ներ։

ՖՈԿԻՆ Միխայիլ Միխայլովիչ (1880–1942), բալետի ռուս. արտիստ, բալետմայստեր։ XX դ–ի սկզբի բալետի բարեփոխիչ։ 1898–ից՝ Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնի արտիստ, 1909–14–ին՝ «Ռուսական թատերաշրջանների» բալետի խմբի ղեկ.։ Բեմադրել է Ա. Ս. Արենսկու «Եգիպտական գիշերներ», «Շոպենիանա» (Ֆ. Շոպենի երաժշտությամբ, երկուսն էլ՝ 1908), Ի. Ֆ. Ստրավինսկու «Պետրուշկա» և այլ բալետներ։

ՖՈՄԻՆ Վասիլի Միխայլովիչ (ծ. 1940), հոծ միջավայրերի մեխանիկայի և մեքենաշինության խնդիրների մաթ. մոդելավորման բնագավառի ռուս գիտնական։ ՌԳԱ ակադ. (2006)։ Բազմաբաղադրիչ և համասեռ միջավայրերում հարվածալիք. շարժընթացների մոդելավորման գիտ. դպրոցի հիմնադիրը։ Նրա ղեկավարությամբ ստեղծվել են շփման գազադինամիկ. բազմագործառույթ մեքենաներ և ավտոմատացված լազերատեխնոլոգ. համալիրներ։ ԽՍՀՄ Պետ. մրց. (1981)։

ՖՈՄԻՉՈՎ Միխայիլ Գեորգիևիչ (1911–1987), ռուս ռազմ. գործիչ, տանկ. զորքերի գեն–լեյտ. (1958)։ ԽՄ հերոս (1944, 1945)։ ՀՄՊ–ի ժամանակ՝ տանկ. բրիգադի հրամ.։

ՖՈՄՎԻԽԱՆ Քեյսոն (1920–1992), *Լատսի* ժողովրդա-հեղ. կուս-յան ԿԿ գլխ. քարտուղարը՝ 1955-ից: 1975–82-ին եղել է երկրի վարչապետը, ՆԽ նախագահ՝ 1982-ից:

ՖՈՅԵՐԲԱԽ (Feuerbach) Անսելմ (1829–1980), գերմանացի գեղանկարիչ: Ստեղծել է անտիկ լեգենդների թեմաներով խոշոր կտավներ («Իփիգենիա», 1862), որոնք աչքի են ընկնում կերպարների իդեալականացմամբ, ձևերի սահուն ռիթմերով:

ՖՈՅԵՐԲԱԽ Լյուդվիգ (1804–1872), գերմանացի փիլ.: Սկզբնապես եղել է Գ. *Հեգելի* հետևորդներից, այնուհետև (1839) քննադատել է նրա փիլ-յունը: Ֆ-ի փիլ-յան կենտրոնում մարդն է՝ որպես կենսբ. էակ, վերաց. անհատ (տես *Անթրոպոլոգիզմ*): Ֆ. կրոնը մեկնաբանել է որպես մարդկային ոգու արարում, որի աղբյուրը կախվածության զգացումն է բնության տարերային ուժերից և հասյունից: Ֆ. բարոյականության հիմք է դիտարկել մարդու երջանկության ձգտումը, որը հասանելի է «սիրո կրոնի» միջոցով: Հեղինակ է «Հեգելի փիլիսոփայության քննադատության շուրջ» (1839), «Քրիստոնեության էությունը» (1841, հայ. հրտ.՝ 1968), «Ապագայի փիլիսոփայության հիմնադրույթներ» (1843) և այլ աշխ-ների:

ՖՈՆԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄ աստղաֆիզիկայում, Տիեզերքի դիֆուզ. և գործնականում համասեռ էլեկտրամագնիս. ճառագայթում: Ֆ. ճ-ման մեջ կարող են մաս ունենալ իրարից չտարբերվող հեռավոր աղբյուրները և տիեզ. տարածությունը լցնող դիֆուզ. նյութը (գազ, փոշի): Ֆ. ճ-ման կարևորագույն բաղադրիչը *մնացորդային ճառագայթումն* է:

ՖՈՆԴ, 1. **կուտակման**, ազգ. եկամտի մաս մակրոտնտ. մակարդակում, որն օգտագործվում է արտադր-յան ընդլայնման համար: 2. **Սպառման**, ազգ. եկամտի մաս, որն օգտագործվում է սպառման առարկաների ու ծառայությունների նկատմամբ անհատ. ու հաս. պահանջմունքների բավարարման համար: 3. **Փոխհատուցման**, հաս. արդյունքի մաս, որը պետք է փոխհատուցվի արտադր-յանը՝ նրա հետագա անխափան գործունեության համար: Փոխհատուցման Ֆ. հավասար է նյութ. ծախսերի (մեքենաների ու սարքավորումների մաշվածքի, հումքի, նյութերի, վառելիքի արժեք ևն) արժեքին:

ՖՈՆԴԱ (Fonda), ամերիկացի դերասանների ընտանիք: 1. **Հենրի Ֆ.** (1905–1982): 1930–40-ական թթ-ին նկարահանվել է մելոդրամատիկ. կատակերգություններում, վեսթեռններում («Պատանի միստր Լինքոլնը», «Յասման ողկույզներ», «Միջաղեպ Օքսբոուում», «Պատերազմ և խաղաղություն», «Ոսկե լճակի վրա», «Տասներկու զայրացած տղամարդիկ» ևն): «Օսկար» մրց. (1981, 1982): Դուստրը՝ **Ջեյն Ֆ.** (ծ. 1937), նկարահանվել է «Հետապնդում», «Ուժասպառ ձիերին սպանում են, այնպես չէ՞», «Ջուլիա», «Տունդարձ», «Սթենլի և Այրիս» և այլ ֆիլմերում: «Օսկար» մրց. (1972, 1979): Որդին՝ **Փիթեր Ֆ.** (ծ. 1940), նկարահանվել է «Վայրի հրեշտակներ», «Անհոգ հեծյալը» և այլ ֆիլմերում, նկարահանել «Վարձու մարդասպանը» (1971) և այլ ֆիլմեր, հանդես եկել նաև որպես պրոդյուսեր:

ՖՈՆԴԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ, արժեթղթերում ներդրված կապիտալը:

ՖՈՆԴԵՐ (ֆրանս.՝ fond, < լատ. fundus – հիմք), 1. պաշարներ, օր.՝ ժող. տնտ-յան Ֆ., հող. Ֆ., սերմային Ֆ.: 2. Ձեռն-ների օգտագործած նյութ. ու դրամ. միջոցները, օր.՝ հիմն. արտադր. Ֆ., շրջանառության Ֆ., աշխատավարձի Ֆ.: 3. Ստեղծման ու օգտագործման որոշակի կարգ ունեցող միջոցների աղբյուրներ, օր.՝ կանոնադր. Ֆ., անբաժանելի Ֆ.: 4. Կայուն եկամուտ ապահովող արժեթղթեր:

ՖՈՆԵՆԴՈՒԿՈՊ, տես *Սրտեթոսկոպ*:

ՖՈՆՈԳՐԱՄ (< հուն. phone – ձայն և gramma – գրություն), **հնչյունագիր**, կրիչ, որի վրա գրանցված են ձայն. տատանումներ: Առավել տարածված են լուսանկարչ. (կինոժապավենի), մագնիս. (մագնիս. ժապավենների, սկավառակների), մեխ. (պլաստմասսայե սկավառակի), օպտիկ. (ամփոփ սկավառակի) Ֆ-ները:

ՖՈՆՈԳՐԱՖ (< հուն. phone – ձայն և *գրաֆ*), **հնչյունագրիչ**, ձայնի մեխ. գրանցման և վերարտադրման առաջին սարքերից: Ստեղծել է Թ. Ա. *Էդիսոնը* 1877-ին ԱՄՆ-ում: Կիրառվել են մինչև 1930-ական թթ.: Ֆ-ի հիմքի վրա ստեղծվել են գրամաֆոնը և պատեֆոնը:

ՖՈՆՈՆ, քվազիմասնիկ, միջավայրի առաձգ. տատանումների քվանտ: Ֆ. հասկացությունը կարևոր դեր է խաղում պինդ մարմնի հատկությունների նկարագրման համար: Բյուրեղ. ցանցը ջերմ. հատկություններով համարժեք է Ֆ-ային գազին:

ՖՈՆՍ (Fonst) Ռամոն (1883–1953), կուբացի մարզիկ (սուսերամարտ): Օլիմպ. խաղերի քառակի չեմպիոն (1900՝ խոցասուսերի անհատ., 1904՝ ճկասուսերի անհատ., ճկասուսերի հավաքականների առաջնությունների):

ՖՈՆՎԻԶԻՆ Դենիս Իվանովիչ (1744/45–1792), ռուս գրող: Ռուս. ազգ. առաջին կատակերգության հեղինակը: Նշանակալի է «Տհասը» (բեմ.՝ 1782, հրտ.՝ 1783) կատակերգությունը: Հեղինակ է «Բրիգադիրը» (1768–69, բեմ.՝ 1770) կատակերգության, «Առաջին ճանապարհորդության գրառումներ» (հրտ.՝ 1800-ական թթ.) նամականու, «Համընդհանուր պալատական քերականության» (տպագրությունն արգելվել է, տարածվել է ձեռագիր) քաղ. երգիծ. երկի, «Կալիսթենես» (1786) վիպակի, նաև հրապարակախոս. գործերի:

ՖՈՆՏԵՅՆ (Fonteyn, Հուկեմ, Hookham) Մարգո (1919–1991), բալետի անգլիացի արտիստուհի: 1934-ից՝ «Սեդլերս-Ուելլս բալլե» (1957-ից՝ Թագավոր. բալետ) թատերախմբի մենապարուհի (Ավրորա՝ Պ. Ի. Չայկովսկու «Քնած գեղեցկուհին», Մարգարիտ՝ «Մարգարիտ և Արման», Ֆ. Լիստի երաժշտությամբ, Ունդինա՝ Հ. Վ. Հենցեի «Ունդինա», ևն), 1954-ից՝ Պարի թագավոր. ակադ-ի նախագահ: Եղիսաբեթ II թագուհու “Prima ballerina assoluta” (1979) մրց.:

ՖՈՆՏԵՆ (Fontaine) Պիեռ Ֆրանսուա Լեոնար (1762–1853), ֆրանսիացի ճարտ.: Ամպիր ոճի հիմնադիրներից: 1792–1814-ին աշխատել է Շ. *Պերսիեի* հետ (կառուցել է հրապարակի կամարը՝ Փարիզում, 1806): Նորովի է օգտագործել չուգունե կառուցվածքները:

ՖՈՇ (Foch) Ֆերդինանդ (1851–1929), ֆրանսիացի զորահրամ.: Ֆրանսիայի (1918), Լեհաստանի (1923) մարշալ, Մեծ Բրիտանիայի ֆլդմ. (1919): Ֆրանսիայի ակադ-ի անդամ (1918): ԱՀՊ-ի ժամանակ՝ կորպուսի, ապա՝ բանակի, 1915–16-ին՝ «Հյուսիս» բանակախմբի հրամ., 1917–18-ին՝ ԳՇ պետ, 1918-ի ապրիլից՝ դաշնակից զորքերի գլխ. հրամ.: Խորհրդ. Ռուսաստան կատարված ինտերվենցիայի կազմակերպիչներից: Հեղինակ է ռազմ. արվ-ին վերաբերող աշխ-ների:

ՖՈՇԱՐ (Fauchard) Պիեռ (1678–1761), ֆրանսիացի վիրաբույժ, գիտ. ստոմատոլոգիայի հիմնադիրը, «Ատամների վիրաբուժություն և բուժում» (1728) 1-ին ձեռնարկի հեղինակը: Աշխ-ները վերաբերում են ատամների պրոթեզավորմանը:

ՖՈՍ (Fosse) Բոբ (Ռոբերտ, 1927–1987), ամերիկացի կինոռեժ., պարուսույց, պարող: Նկարահանել է «Սիրելի Չարիտի» մյուզիքլը (1969, Ֆ. Ֆելլինիի «Կաբիրիայի գիշերները» ֆիլմի մոտիվներով), առավել ճանաչվել «Կաբարե» (1972) կինոնկարով: Շոու-բիզնեսի ներկայացուցիչների ողբերգ. ճակատագրերին է նվիրված «Լենին» (1974), «Այս ամբողջ ջազը» (1979), «Աստղ 80» (1983) կինոնկարները:

«Օսկար» մրց. (1973, 1980):

ՖՈՍԳԵՆ (հուն.՝ phos – լույս և ...*գեն*), $COCl_2$, անգույն, փտած խոտի հոտով գազ է, $t_{եռ.}$՝ 8,2°C: Ներկանյութերի, միզանյութի, պոլիկարբոնատների արտադր-յան հումք է: ԱՀՊ-ի ժամանակ օգտագործվել է որպես խեղդող թունավոր նյութ: Մահացու կոնցենտրացիան՝ 0,1–0,3 *մգ/լ*՝ 15 *ր* տևողության դեպքում: Օժտված է ազդեցության գաղտնի շրջանով (2–12 *ժ*) և կուտակային էֆեկտով:

ՖՈՍՖԱՏՆԵՐ, ֆոսֆորական թթվի՝ H_3PO_4, աղերը և էսթերները: Աղերը պարունակվում են ֆոսֆոր. պարարտանյութերում, հանք. կերերում, լվացամիջոցներում ևն: Էսթերներն էքստրագենտներ են, հիդրավլիկ. և քսանյութ. հեղուկներ, պլաստիֆիկարարներ, հակապիրեններ:

ՖՈՍՖԻԴՆԵՐ, ֆոսֆորի քիմ. միացություններն առավել էլեկտրադր. տարրերի հետ: Բյուրեղ. նյութեր են, հեշտությամբ քայքայվում են ջրով կամ թթուներով՝ առաջացնելով թունավոր ֆոսֆին: Գալիումի, ինդիումի Ֆ. (GaP, InP) կիսահաղորդիչներ և օպտոէլեկտրոն. նյութեր են, ցինկի Ֆ. (Zn_3P_2) կենդանասպան է:

ՖՈՍՖԻՆ, **ֆոսֆորաջրածին**՝ PH_3, ֆոսֆորի հիդրիդ, տհամ հոտով անգույն գազ է, $t_{եռ.}$՝ –87,42°C: Ուժեղ վերականգնիչ է: Հայտնի է հեղուկ Ֆ., որը կոչվում է երկֆոսֆին՝ P_2H_4, $t_{եռ.}$՝ 56°C: Օդում ինքնաբերաբար բոցավառվում է: Թունավոր է:

ՖՈՍՖԻՏՆԵՐ, ֆոսֆորային թթվի՝ H_3PO_3, աղերն ու էսթերները: NaH_2PO_3 և Na_2HPO_3 աղերը բյուրեղներ են: Էսթերները [3-րդային՝ $(RO)_3P$, 2-րդային՝ $(RO)_2POH$, առաջնային՝ $(RO)P(OH)_2$, որտեղ R-ն օրգ. ռադիկալ է] հեղուկ կամ պինդ նյութեր են: Ֆ. վերականգնիչ են, պոլիմերների կայունարարներ ու հակաօքսիդանտներ, կիսամշակ հումք՝ ֆոսֆորօրգ. միացությունների սինթեզում:

ՖՈՍՖՈԼԻՊԻԴՆԵՐ, ֆոսֆորական թթվի մնացորդ պարունակող բարդ լիպիդներ: Պարունակվում են բոլոր կենդանի բջիջներում, կենսբ. թաղանթների գլխ. բաղադրիչներն են: Արյան լիպոպրոտեինների կազմում մասնակցում են ճարպերի, ճարպաթթուների և խոլեստերինի տեղափոխմանը:

ՖՈՍՖՈՊՐՈՏԵԻԴՆԵՐ, ֆոսֆորական թթվի մնացորդներ պարունակող բարդ սպիտակուցներ: Ֆ. են կաթի կազեինը, հավի ձվի սպիտակուցը (օվալբումին, վիտելին), մի շարք ֆերենտներ:

ՖՈՍՖՈՐ (Phosphorus), P, **լուսածին**, տարրերի պարբեր. համակարգի V խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 15, ա. զ.՝ 30,973762: Առաջացնում է մի քանի ձևափոխություն՝ սպիտակ Ֆ. (խտ.՝ 1,828 $գ/սմ^3$, $t_{հալ.}$՝ 44,14°C), կարմիր Ֆ. (խտ.՝ 2,31 $գ/սմ^3$, $t_{հալ.}$ 593°C) ևն: Սպիտակ Ֆ. հեշտությամբ ինքնաբոցավառվում է, լուսավորվում մթության մեջ (այստեղից՝ անվանումը), թունավոր է, կարմիրը քիմիապես քիչ ակտիվ է և թունավոր: Ստանում են ապատիտներից և ֆոսֆորիտներից: Գղտ-յան մեջ օգտագործվում են ***ֆոսֆորական պարարտանյութերը***, կիրառվում է լուցկու արտադր-յան մեջ, մետաղագործության (վերականգնիչ է և որոշ համաձուլվածքների բաղադրիչ) մեջ, օրգ. սինթեզում ևն: Կենդանի բջիջներում գոյություն ունի օրթո- և պիրոֆոսֆոր. թթուների և դրանց ածանցյալների ձևով:

ՖՈՍՖՈՐԱԿԱՆ ԹԹՈՒ, **օրթոֆոսֆորական թթու**՝ H_3PO_4, $t_{հալ.}$՝ 42,5°C, միջին ուժգնության թթու: Աղերն ու էսթերները կոչվում են ***ֆոսֆատներ***: Կիրառվում է պարարտանյութերի, դեղանյութերի, կեր. խտանյութերի արտադր-յան մեջ, որպես կատալիզորդ՝ օրգ. սինթեզում, հրաշեջ (հակահրային հավելանյութ), մետաղների ծածկերի հակակոռոզային բաղադրիչ: Բազմաֆոսֆորական թթուները Ֆ. թ-ի կոնդենսման արգասիքներ են, կիսամշակ հումք՝ բարձրկոնցենտրիկ պարարտանյութերի արտադր-յան մեջ, և կատալիզորդներ:

ՖՈՍՖՈՐԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ, հանք. նյութեր, որոնք օգտագործվում են որպես ֆոսֆորի աղբյուր՝ բույսերի սնուցման համար: Տարբերում են ջրալույծ (սուպերֆոսֆատ), ցիտրատալուծելի (պրեցիպիտատ), դժվարալույծ (ֆոսֆորիտային ալյուր Ֆ. պ.): Հեռանկարային են բարձրկոնցենտրիկ Ֆ. պ. (օր.՝ պոլիֆոսֆատները): Ֆ. պ. բարձրարդյունավետ են բոլոր հողերում գղտ. տարբեր մշակարույսերի համար, դրանք ազոտով և կալիումով սնուցելիս:

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԹԹՈՒ, H_3PO_3, անջուր Ֆ. թ-ները բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 74°C: Վերականգնիչ է անօրգ. սինթեզում: Աղերն ու էսթերները կոչվում են ***ֆոսֆիտներ***:

ՖՈՍՖՈՐԱՋՐԱԾԻՆ, տես *Ֆոսֆին*:

ՖՈՍՖՈՐԵՍՑԵՆՏՈՒՄ, *յումինևսցենտումից* ավելի տևական (սահմանը պայմանական է) ֆլուորեսցենտում: Կարող է շարունակվել մի քանի օր՝ գրգռման դադարեցումից հետո:

ՖՈՍՖՈՐԻ ՔԼՈՐԻԴՆԵՐ, եռքլորիդ՝ RCl_3, անգույն, սուր հոտով, օդում ծխացող հեղուկ է, $t_{հալ.}$՝ –90,34°C, $t_{եռ.}$՝ 75,3°C: Կիրառվում է ֆոսֆորօրգ. միացությունների սինթեզում: Պենտաքլորիդ՝ RCl_5, կանաչասպիտակավուն բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 160°C, քլորացնող ագենտ՝ օրգ. սինթեզում: Թունավոր են:

ՖՈՍՖՈՐԻ ՕՔՍԻԴՆԵՐ, առավել կարևոր են P_2O_3 (կամ P_4O_6), $t_{հալ.}$՝ 23,9°C, և P_2O_5 (կամ P_4O_{10}), $t_{հալ.}$՝ 420°C: P_2O_5-ը կիրառում են գազերը և հեղուկները չորացնելու համար, ջրազրկող ազդակ է, իզորուտիլենի պոլիմերման կատալիզորդ, ֆոսֆատ. ապակիների բաղադրիչ ևն:

ՖՈՍՖՈՐԻԼԱՅՈՒՄ, ֆոսֆորական թթվի (H_3PO_4) մնացորդի ներմուծումն օրգ. միացության մեջ, օր.՝ $C_2H_5OH + ClP(O)(OCH_3)_2 \rightarrow$ $\rightarrow C_2H_5OHOP(O)(OCH_3)_2 + HCl$: Այսպես կոչված կենսբ. Ֆ. կարևոր նշանակություն ունի նյութափոխանակության մեջ (օքսիդացում, սպիտակուցների, նուկլեինաթթուների սինթեզ ևն):

ՖՈՍՖՈՐՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, մոլ-ում ֆոսֆոր պարունակող օրգ. միացություններ, որոնցում ֆոսֆորի ատոմն անմիջականորեն միացած է ածխածնի ատոմին, օր.՝ եռալկիլֆոսֆինները՝ R_3P, $RP(OH)_2$ (R-ը՝ օրգ. ռադիկալ) տիպի թթուները: Հաճախ Ֆ. մ. համարվում են նաև այն միացությունները, որոնցում ֆոսֆորի ատոմն ածխածնի ատոմին միացած է թթվածնի, ազոտի կամ ծծմբի ատոմների միջոցով, օր.՝ նուկլեինաթթուները, ադենոզինե եռֆոսֆատը ևն: Սինթետիկ Ֆ. մ. են պեստիցիդները, պլաստիկարարները, լուծիչները, հակապիրենները ևն: Կիրառում են որպես պոլիմերների կայունարարներ և պլաստիկարարներ, էքստրագենտներ, քսայուղերի և հիդրավլիկ հեղուկների, դեղամիջոցների, պեստիցիդների հավելուկներ: Որոշ Ֆ. մ. խիստ թունավոր են (օր.՝ զոմանը, վի-գազը ևն):

ՖՈՎ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Լուիզ (ծ. 1930), ֆրանսահայ հոգեբույժ: Բժշկագիտ. դ-ր (1991): Կաթողիկոս Վազգեն Ա. ***Պալճյանի*** միջնորդությամբ զբաղվել է 1985–91-ին Փարիզի Վիլժյուֆի հոգեբուժ. հիվանդանոցում եղած Կոմիտասի հոգեկան հիվանդությանը վերաբերող արխիվ. նյութերի ուսումնասիրությամբ: 1989–90-ին Հայաստանում մասնագիտ. օգնություն է ցուցաբերել երկրաշարժից ու պատերազմից տուժած բնակչությանը:

ՖՈՏՈԹԵՐԱՊԻԱ, տես *Լուսաբուժություն*:

ՖՈՏՈԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **լուսակենսաբանություն**, կենսբ-յան բաժին. ուսումնասիրում է լույսի ազդեցությունը մարդու, բույսերի և կենդանիների օրգանիզմներում տեղի ունեցող կենսընթացների վրա: Հետազոտում է լուսասինթեզը, լուսաընկալումը (այդ թվում՝ տեսողության մեխանիզմը), ֆոտոտաքսիսները, ֆոտոտրոպիզմները, լուսապարբերականությունը ևն:

ՖՈՏՈՆ [< հուն. phós (phótos) – լույս], էլեկտրամագնիս. ճառագայթման քվանտ, էլեկտրականապես չեզոք տարր. մասնիկ՝ 0-ական զանգվածով և 1 սպինով: Լիցքավորված մասնիկների միջև էլեկտրամագնիս. փոխազդեցության կրողը: Ֆ-ի էներգիան՝ $E=ħω$, իմպուլսը՝ $P=ħω/C$, որտեղ ħ-ը Պլանկի հաստատունն է, c-ն՝ լույսի արագությունը վակուումում, ω-ն՝ համապատասխան էլեկտրամագնիս. ճառագայթման անկյուն. հաճախությունը:

ՖՈՏՈՄԻՆԹԵԶ, տես *Լուսասինթեզ*:

ՖՈՏՈՔՐՈՄԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ, լուսազգայուն նյութեր, որոնցում առկա ֆոտոքրոմիզմի երևույթն օգտագործվում է պատկերների և օպտիկ. ազդանշանների գրանցման համար: Կիրառում են որպես լուսազտիչներ, լուսապաշտպան սարքեր, արևային էներգիայի կուտակման, տեղեկույթի պահպանման և այլ սարքավորումներում: Ֆ. ն-ի օրինակներ են սիլիկատ. ապակիները, որոնք պարունակում են AgBr, AgCl ևն, ալկալիական մետաղների հալոգենիդների ակտիվացրած բյուրեղները (KCl, KBr, NaF), պոլիմերները՝ օրգ. նյութերի (օր.՝ սպիրոպիրանների) հիմքով:

ՖՈՏՈՔՐՈՄԱԶԴ, տես *Լուսագունություն*:

ՖՈՏՈՕՖԹԱԼՄԻԱ, կոպերի մաշկի և շաղկապենու ախտահարումն ԱՄ, հզոր տեսանելի կամ ԵԿ ճառագայթների ազդեցությամբ: Դրսևորվում է արցունքահոսությամբ, լուսավախությամբ և կոպի սպազմով:

ՖՈՐ (Faure) Ֆելիքս Ֆրանսուա (1841–1899), Ֆրանսիայի Հանրապետության նախագահ՝ 1895–99-ին:

ՖՈՐԱՄԻՆԻՖԵՐՆԵՐ, արմատոտանիների դասի նախակենդանիների կարգ: Մարմինը (չափերը՝ 0,1–1 *մմ*, հազվադեպ՝ մինչև 20 *սմ*) պարփակված է իրար կպած ավազահատիկներից կամ կրաքարից կազմված խեցու մեջ: Հայտնի է ժամանակակից ավելի քան 1000 տեսակ (մոտ 30 հզ. բրածո), հիմնականում՝ ծովերում: Կենս. ցիկլը ներառում է անսեռ և սեռ. բազմացումը: Ուղեցույց բրածո է:

ՖՈՐԲՈՒՇԻ ԷՖԵԿՏ, տիեզ. ճառագայթների ինտենսիվության թուլացում, որը սովորաբար կապված է մագնիս. փոթորիկների հետ: Բացատրվում է արեգակնամերձ տարածությունից տիեզ. ճառագայթների մասնիկների դուրսմղումով այն մասնիկների հոսքերի մագնիս. դաշտերով, որոնք ծնվում են Արեգակի վրա տեղի ունեցող բռնկումներից և առաջացնում մագնիս. փոթորիկներ: Հայտնաբերել է (1937) ամերիկացի ֆիզիկոս Ս. Ֆորբուշը (1904–1984):

ՖՈՐԴ (Ford) Հարիսոն (ծ. 1942), ամերիկացի կինոդերասան: Ճանաչվել է «Աստղային պատերազմներ», «Կայսրությունը պատասխան հարված է հասցնում», «Կորած տապանը որոնողները», «Ինդիանա Ջոնսը և Ճակատագրի տաճարը», «Ինդիանա Ջոնսը և վերջին խաչակրաց արշավանքը», «Հայրենասերների խաղերը», «Փախստականը» և այլ ֆիլմերով:

«Ոսկե գլոբուս» (2002), «Կեսար» (2010) և այլ մրց-ներ:

ՖՈՐԴ Հենրի (1863–1947), ամերիկացի արդյունաբերող, ԱՄՆ ավտոմոբիլ. արդ-յան հիմնադիրներից: 1892–96-ին ստեղծել է քառատակտ. շարժիչով 1-ին ավտոմոբիլը («Ֆորդ»), 1903-ին հիմնադրել է «Ֆորդ Մոթոր» ավտոմոբիլ. ընկ-ը՝ խոշորագույններից՝ աշխարհում: Իր գործարաններում լայնորեն ներդրել է արտադր-յան հոսքային-զանգված. համակարգը (տես ***Ֆորդիզմ***):

ՖՈՐԴ Ջերալդ Ռուդոլֆ (1913–2006), ԱՄՆ 38-րդ նախագահը՝ 1974–77-ին՝ Հանրապետ. կուս-յունից: 1965–73-ին՝ հանրապետականների առաջնորդ՝ ներկայացուցիչների պալատում: 1973–74-ին՝ ԱՄՆ փոխնախագահ:

ՖՈՐԴ Ջոն (Շոն Ալոիզիուս Օ'Ֆիռնա, O'Fearna, 1894–1973), ամերիկացի կինոռեժ.: Նկարահանել է «Դիլիժանս» (1939), «Պատանի միստր Լինքոլնը» (1939), «Ցասման ողկույզներ» (1940), «Ծխախոտի ճանապարհը» (1941), «Լիբերտի Վելանսին գնդակահարողը» (1962) և այլ ֆիլմեր:

«Օսկար» մրց. (1936, 1941, 1942, 1953):

ՖՈՐԴԻԶՄ, հոսքային-զանգված. արտադր-յան կազմակերպման համակարգը, որը հիմնվում է արտադր-յան ստանդարտացման, տիպայնացման ու հոսքագծերի կիրառման վրա: Առաջին անգամ ներդրվել է Հ. ***Ֆորդի*** ամերիկ. ավտոգործարաններում XX դ-ի 1-ին քառորդում: Ֆ-ի մեթոդները նպաստում են աշխ-ի արտադրողականության բարձրացմանը:

ՖՈՐԵՍՏ, **Դե Ֆորեստ** (De Forest), Լի (1873–1961), ամերիկացի ճարտարագետ: Ռադիոտեխնիկայի և հնչյուն. կինոյի բնագավառի հայտնագործությունների հեղինակ: Ստեղծել է ***տրիոդը*** (1906),

լամպ. դետեկտորը և դրա վրա հիմնված ուժեղարարը («Ֆ–ի աուդիոն»):

ՖՈՐՄԱԼԻԶՄ (ֆրանս.՝ formalisme, < լատ. formalis – ձևին վերաբերող), 1. ձևապաշտություն, մարդկային գործունեության տարբեր ոլորտներում բովանդակության նկատմամբ ձևին տրվող նախապատվությունը: Ֆ. է վարվեցողության կանոններին, ծեսերին անշեղորեն հետևելը, երբ տվյալ իրադրության մեջ դա նույնիսկ անիմաստ է և անհեթեթ: Արվ–ի պատմության մեջ Ֆ. է բովանդակությունից գեղ. ձևի կտրելը, ձևն արվ–ի միակ արժեքավոր տարր ընդունելը: 2. Մաթ. և տրամաբ–յան հիմնավորման հիմն. ուղղություններից (ինտուիցիոնիզմի և լոգիցիզմի հետ): Ֆ–ի հիմնադիրն է Դ. *Հիլբերտը* (առաջարկել է ձևայնացնել ամբողջ մաթ–ը և մետամաթ–ի եղանակներով ապացուցել ձևայնացված մաթ–ի անհակասականությունը):

ՖՈՐՄԱԼԻՆ, ջր. լուծույթ, որը պարունակում է 37–40 % մրջնալդեհիդ և 6–15 % մեթիլ սպիրտ (կայունարար): Պահպանման ժամանակ մգանում է, անջատվող սպիտակ նստվածքի (պարաֆորմալդեհիդ) պատճառով: Մրջնալդեհիդի աղբյուր է, վարակազերծող և հոտազերծող միջոց, անատոմ. պատրաստուկների պատրաստման և կաշվի դարբաղման լուծույթ:

ՖՈՐՄԱՆ (Forman) Միլոշ (Յան Տոմաշ, ծ. 1932), չեխ կինոռեժ., սցենարիստ: Համաշխ. ճանաչման է արժանացել «Սև Պետրոսը» (1964), «Շիկահերի սիրային արկածները» (1965) ֆիլմերով: 1968–ից՝ ԱՄՆ–ում: Նկարահանել է «Թռիչք կկվի բնի վրայով» (1975), «Վարսեր» (1979), «Ռեգթայմ» (1981), «Ամադեուս» (1984), «Գոյայի ուրվականները» (2006), «Մյունխենի ուրվականը» (2009) և այլ ֆիլմեր:

«Օսկար» մրց. (1976, 1985):

ՖՈՐՄԱՑԻԱ, 1. (երկրբ.), (նոր լատ.՝ formation, < լատ. formatio – առաջացում, ձևավորում), կազմավորման ընդհ. պայմաններով կապված լեռն. ապարների բնական և օրինաչափ համակցումը: Առաջանում են երկրակեղևի հիմն. կառուցվածք. գոտիների զարգացման որոշակի փուլերում: Տարբերում են քարաբան. (մագմատիկ և փոխակերպային), հրաբխ., հանք. Ֆ–ներ: 2. (Բուսաբ.) բուս. համակցության դասակարգման միավոր, որը միավորում է ընդհ. տեսակով՝ էդիֆկատորով, խմբավորումները: Օր.՝ սովոր. սոճու Ֆ. միավորում է բոլոր այն խմբավորումները, որտեղ գերակշռում է սոճին:

ՖՈՐԾ (Կոմարովա) Օլգա Դմիտրևնա (1873–1961), ռուս գրող: Մայրը հայուհի է: Հեղինակ է «Տաք արտադրամաս» (1926), «Խելահեղ նավը» (1930), «Արջնագռավ» (1933), «Միխայլովյան ամրոց» (1946), «Ազատության առաջնեկները» (1950–53) վեպերի, «Քար հագածները» (1924–25) պատմավեպի, «Ռադիշչև» (1932–39) եռերգության, «Ամառային ձյուն» (1925), «Փարիզի տիկնիկները» (1930) և պատմվածքների այլ ժող–ների, նաև պիեսների, հեքիաթների:

ՖՈՐՍԱՅԹ (Forsythe) Ուիլյամ (ծ. 1949), ամերիկացի պարող, պարուսույց: Ժամանակակից պարի առաջատարներից: 1984–ից՝ Ֆրանկֆուրտի բալետի ղեկ.: «Ուիլյամ Ֆորսայթի ընկերության» հիմնադիր (2005, Մայնի Ֆրանկֆուրտ): Բեմադրություններից են՝ «Քայլեր» (1985, ըստ Յ. Ս. Բախի երաժշտության) «Լիմբի թեորեմը» (1990, ըստ Թ. Վիլլեմսի երաժշտության) ևն:

ՖՈՐՍՄԱՆ (Forssmann) Վեռներ (1904–1979), գերմանացի վիրաբույժ և ուրոլոգ, սրտի ձողարկման (կաթետերացում) հեղինակներից: Նոբելյան մրց. (1956, Ա. *Կուրնանի* և Դ. *Ռիչարդսի* հետ):

ՖՈՐՏ ՈՒԵՐԹ (Fort Worth), ք. ԱՄՆ Տեխաս նահանգում՝ Դալասից արմ.: Բն.՝ 751 հզ. (2010, Դալաս–Ֆորտ Ուերթ–Առլինգտոն ագլոմերացիայում՝ ավելի քան 6,5 մլն): Ունի օդանավակայան: Կան օդանավա– և հրթիռաշին., էլեկտրոն., նավթավերամշակման, քիմ. արդ–յան և այլ ձեռն–ներ:

ՖՈՐՏԱԼԵԶԱ (Fortaleza), ք–նվ՝նգստ Բրազիլիայի հս–արլ–ում՝ Ատլանտ. օվկ–ի ափին, Սեարա նահանգ–ի վարչ. կենտրոնը: Բն.՝ 2,56 մլն, ագլոմերացիայում՝ ավելի քան 3,5 մլն (2010): Ունի օդանավակայան: Հիմնադրվել է 1612–ին:

ՖՈՐՏՈՎ Վլադիմիր Եվգեննիչ (ծ. 1946), ռուս գիտնական և պետ. գործիչ: ՌԳԱ ակադ. (1991): Իդեալ. պլազմայի դինամիկ. ֆիզիկայի գիտ. ուղղության ստեղծողը: ՌԳԱ Բարձր ջերմաստիճանների միացյալ ինստ–ի տնօրեն (2007–ից): ՌԳԱ նախագահ (2013–17, փոխնախագահ՝ 1996–2001): Էներգետիկայի, մեքենաշինության, մեխանիկայի կառավարման շարժընթացների բաժանմունքի ակադ. քարտուղար (2002–13 և 2017–ից): ՌԴ գիտ–յան և տեխնոլոգիաների պետ. կոմիտեի նախագահ (1996–98), գիտ–յան և տեխնոլոգիայի նախարար, ՌԴ Կառ–յան փոխնախագահ (1996–97):

ԽՍՀՄ (1988), ՌԴ (1997) Պետ. մրց–ներ:

ՖՈՐՏՈՒՆԱ, (Fortuna), երջանկության, հաջողության աստվածուհին հռոմ. դիցյան մեջ: Պատկերվել է առատության եղջյուրով, երբեմն՝ անիվի վրա, ինչպես նաև աչքերը կապված: Փիր. իմաստով՝ պատահական հաջողություն:


ՖՈՐՏՈՒՆՈՎ Ֆիլիպ Ֆեոդորովիչ (1848–1914), ռուս. լեզվաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1898): Մոսկվայի լեզվար. դպրոցի (1876–1902) հիմնադիրը: Հնդեվրոպաբանությանը նվիրված աշխատություններում անդրադարձել է հայ–ի հոլով. վերջավորություններին, բայական որոշ ձևերի ծագմանը:

ՖՈՐՈՒՄ (լատ.՝ forum), նախապես՝ շուկայի հրապարակ Հին Հռոմում, ապա՝ հաս. և քաղ. կյանքի կենտրոն, կայսեր. շրջանում՝ ճարտ. հանդիսավոր քանդակազարդ համալիրներ (քաղաքը հովանավորող աստվածների տաճարներ, դատ. և քաղաք. վարչության բազիլիկներ, հաղթակամարներ ևն): Հռոմում հայտնի է Ռոմանում Ֆ. (Համաշխ. մշակութ. ժառանգության ցանկում է), որը համանման համալիրների շարք է, կառուցվել է մ. թ. ա. I դ.–մ. թ. II դ–ում:


ՖՈՔՍՏԵՐԻԵՐ (անգլ.՝ Fox – terrier), *փոքրիկների* խմբի որսորդ. շների ցեղ. ստացվել է XVIII դ–ում Անգլիայում:

ՖՈՔՍՏՐՈՏ (անգլ.՝ Foxtrot – բառացի՝ աղվեսաքայլ), ամերիկ. հանդիսապար: Ձևավորվել է 1910–ական թթ–ին ԱՄՆ–ում՝ որպես սալոն. պար: Եվրոպայում տարածվել է XX դ–ի սկզբին: Երաժշտ. չափը՝ 4/4:

ՖՏԱԼԱԹԹՎԻ ԱՆՀԻԴՐԻԴ, անգույն բյուրեղներ են, $t_{հալ.}$՝ 130,8°C (ցնդելով): Ալկիդային խեժերի, պլաստիֆիկարարների (ֆտալաթթվի էսթերներ), ներկանյութերի հումք է:



ՖՏԱԼԱԹԹՈՒՆԵՐ, արոմատիկ կարբոնաթթուներ: Հայտնի են *օրթո*–Ֆ. (ֆտալաթթու), *մետա*–Ֆ. (իզոֆտալաթթու), *պարա*–Ֆ. (տերեֆտալաթթու): Դժվարահալ բյուրեղ. նյութեր են, պոլիէսթերների, դեղամիջոցների, ներկանյութերի ստացման հումք: Կարևոր նշանակություն ունեն Ֆ–ի ածանցյալները՝ ֆտալաթթվի անհիդրիդը և էսթերները (օր.՝ երկմեթիլտերեֆտալատը, երկբութիլֆտալատը):



ՖՏԱԼԱՏՆԵՐ, ֆտալաթթվի աղերն ու էսթերները, օր.՝ երկբուտիլ ֆտալատը: Օգտագործում են որպես պլաստիֆիկարարներ, ճաշաչափ. հեղուկներ, լուծիչներ:

ՖՏՈՐ (Ftuorum), F, տարրերի պարբեր. համակարգի VII խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 9, ա. զ.՝ 18,9984032, հալոգեն է: Ազատ ֆտորի մոլ–ը երկատոմանի է (F_2), սուր հոտով բաց դեղին գազ է, $t_{հալ.}$՝ –219,7°C, $t_{եռ.}$՝ –188,2°C, խտ.՝ 1,7 $գ/դմ^3$: Ամենաակտիվ ոչ մետաղն է, ռեակցում է բոլոր տարրերի հետ՝ բացի գալիումից, նեոնից և արգոնից: Ֆ–ի փոխազդեցությունը շատ նյութերի հետ հեշտությամբ վերածվում է այրման և պայթյունի: Ֆ. քայքայում է շատ նյութեր, այստեղից՝ հուն. անվանումը՝ phthoros – քայքայում: Գլխ. միներալներն են ֆլյուորիտը, կրիոլիտը, ֆտորապատիտը: Կիրառում են ֆտորօրգ. միացություններ և ֆտորիդներ ստանալու համար: Ֆ. մտնում է կենդանի օրգանիզմների հյուսվածքների (ոսկորներ, ատամի արծն) բաղադրության մեջ:

ՖՏՈՐԱՋՐԱԾԻՆ, HF, անգույն գազ կամ շարժուն, օդում ծխացող, սուր հոտով հեղուկ, $t_{հալ.}$՝ –83,6°C, $t_{եռ.}$՝ 19,52°C, խտ.՝ 0,98 $գ/սմ^3$ (12°C–ում): Ջրի հետ խառնվում է բոլոր հարաբերություններով՝ առաջացնելով ֆտորաջրածնական թթու: Ստանում են ֆլյուորիտի ջերմ. քայքայումից: Կիրառում են ֆտորի, ֆտորօրգ. միացությունների, արհեստ. կրիոլիտների (Al–ի հալեցման համար), ֆտորիդների արտադր–յան, տանտալային և նեոբիումային խտանյութերի վերամշակման համար: Թունավոր է և վտանգավոր:

ՖՏՈՐԱՋՐԱԾՆԱԿԱՆ ԹԹՈՒ, պլավիկյան թթու, ֆտորաջրածնի ջր. լուծույթը, համեմատաբար թույլ թթու է: Փոխազդում է սիլիկատային նյութերի հետ, կիրառվում ապակու խածատման համար: Վտանգավոր է գործածության մեջ:

ՖՏՈՐԱՅՈՒՄ, 1. ֆտորի ատոմի ներմուծումն օրգ. միացության մեջ, օր.՝ $CH_3COOH + SF \rightarrow CH_3C(O)F$: 2. Խմելու ջրի և սննդամթերքի արհեստ. հարստացումը ֆտորի միացություններով, ատամների կարիեսի կանխարգելման միջոց՝ հողում և ջրում ֆտորի անբավարար պարունակության դեպքում:

ՖՏՈՐԻԴՆԵՐ, ֆտորի քիմ. միացություններն այլ տարրերի հետ: Մետաղների մեծամասնության Ֆ. (ֆտորաջրածնական թթվի աղերը) բարձր հալման կետով բյուրեղներ են: Ոչ մետաղների Ֆ. հեղուկներ են կամ գազեր: Ֆ. օգտագործում են ֆտոր ստանալու համար, որպես օքսիդիչներ (ClF_3, ClF_5)՝ հրթիռ. վառելանյութերում, ուրանի (UF_6) իզոտոպների բաժանման, օպտիկ. ապակիների արտադր–յան (LiF, MgF_2, CaF_2 ևն) ֆտորացման (CoF_3, AgF) համար, որպես դիէլեկտրիկներ ($SiFU_6$):

ՖՏՈՐԿԱՈՒՉՈՒԿՆԵՐ, ֆտոր պարունակող կաուչուկներ, ֆտորօրգ. միացությունների պոլիմերման արգասիքներ, հիմնականում՝ վինիլիդենֆտորիդը եռֆտորքլորէթիլենի՝ $[-CH_2CF_2CF_2CFCl-]_n$, կամ հեքսաֆտորպրոպիլենի՝ $[-CH_2CF_2CF_2CF(CF_3)-]_n$, հետ: Ֆ–ի ռետինանները ջերմակայուն են, այրվող չեն, կայուն են օքսիդիչների, յուղերի, վառելիքի հանդեպ: Կիրառվում են հիմնականում ջերմակայուն խտարարների արտադր–յան մեջ:

ՖՏՈՐՈՊԼԱՍՏՆԵՐ, օլեֆինների ֆտոր ածանցյալների պոլիմերման արգասիքների՝ սինթետիկ ջերմապլաստիկ պոլիմերների ընդհ. անվանումը: Առավել տարածված են բազմաքառաֆտորէթիլենը, բազմաեռֆտորքլորէթիլենը, բազմավինիլիդենֆտորիդը, ինչպես նաև քառաֆտորէթիլենի և էթիլենի (կամ այլ մոնոմերի) համապոլիմերը:

ՖՏՈՐՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, մոլ–ում պարունակում են ֆտորի մեկ կամ մի քանի ատոմներ, որոնք անմիջապես միացած են ածխածնի ատոմի հետ: Քասյուղեր են, հիդրավլիկ. հեղուկներ, ֆտորոպլաստներ, ֆտորկաուչուկներ, սառնազդակներ, ներկանյութեր, բժշկության մեջ՝ անզգայացնող միջոցներ և արյան փոխարինիչներ:

ՖԱԴԵԿԻՆ Եֆիմ Սամոյլովիչ (1924–1999), ռուս. ֆիզիկոս–տեսաբան: ՌԳԱ ակադ. (1990): Աշխ–ները վերաբերում են դաշտի քվանտ. տեսությանը և քվանտ. վիճակագրությանը, հիդրոդինամիկային: Քվանտ. գրավիտացիայում (1974) և գերգրավիտացիայում (1977) ստացել է ցրման մատրիցայի լուծում: ԽՍՀՄ Պետ. մրց. (1953):

ՖԱԴԵԿԻՆ Մարկ Գրիգորևիչ (1914–1990), ռուս. կոմպոզիտոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1985): Հեղինակ է հանրահայտ երգերի («Երգ Դնեպրի մասին», «Պատահական վալս», «Պտտվում, պտտվում է մրրիկը վերևում», «Կեչիներ», «Հոսում է Վոլգան», «Կարմիր նժույգ», «Ո՞ւր է իմ հարազատ տունը» ևն), կինոերգերի («Կամավորներ», 1958, «Հասարակ պատմություն», 1960, «Մի անգամ 20 տարի անց», 1981, «Հայրեր և պապեր», 1982, ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1979):

ՖՐԱԿԱՍՏՈՐՈ (Fracastoro) Ջիրոլամո (1478–1553), Վերածննդի դարաշրջանի իտալացի գիտնական, բժիշկ, աստղագետ, բանաստեղծ: «Հպավարակայնության, հպավարակային հիվանդությունների և բուժման մասին» (1546) աշխ–յան մեջ առաջինն է շարադրել վարակների և նրանց փոխանցման ուղիների մասին համակարգ. ուսմունքը:

ՖՐԱԿՑԻԱ, սորուն կամ հատիկային պինդ նյութերի (ավազ ևն) կամ հեղուկ խառնուրդի (նավթ ևն) մաս, որն անջատվում է ըստ որոշակի հայտանիշի: Օր.՝ Ֆ. առանձնացնում են՝ ըստ մասնիկների կամ հատիկների չափերի՝ մաղային վերլուծության, ըստ եռման ջերմաստիճանի՝ նավթի կոտորակ. թորման դեպքում (թորամաս):

ՖՐԱՅԲՈՒՐԳ (Freiburg), ք. Գերմանիայի Բադեն–Վյուրտեմբերգ երկրամասում: Բն.՝ 220 հզ. (2010):

ՖՐԱՅԲՈՒՐԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ Ալբերտ Լյուդվիգի անվան, Գերմանիայի հնագույն համալսարաններից: Հիմնադրվել է 1457–ին Ֆրայբուրգում՝ «Ալբերտինա» անվանումով: 2015–ին ուներ ավելի քան 21 հզ. ուսանող:

ՖՐԱՆԳՅԱՆ Երվանդ (1878–1928), փիլ.: Փիլ. գիտ. դ–ր (1913): Էմպիրիոկրիտիցիզմի փիլ–յան ներկայացուցիչ: Ըստ Ֆ–ի՝ փիլ–յունը գիտ–յունների գիտ–յուն չէ. ամեն մի գիտ–յուն ունի իր փիլ–յունը, իսկ հաս. զարգացման հարցում մեծ է սուբյեկտիվ գործոնների՝ գիտակցության ձևերի, գաղափարախոսության դերը: Հեղինակ է «Ատրպատական» (1905), «Ն. Կ. Միխայլովսկին որպէս փիլիսոփայ եւ սոցիոլոգ» (1911), «Հասարակական էտիւդներ» (1917) և այլ աշխ–ների:

ՖՐԱՆԳՈՒԼՅԱՆ Ռոզալիա Վարդանի (1925–1986), կինոռեժ., սցենարիստ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1967): 1950–ից՝ Հայֆիլմի, 1955–82–ին՝ Հայաստանի վավերագր. ֆիլմերի ստուդիայի ռեժ. («Սարտիրոս Սարյան», 1955, 1961, «Հանդիպում վաղորդյան աստղի հետ», 1967, «Արամ Խաչատրյան», 1981, «Հայաստան՝ թատրոնների երկիր», 1984, «Ծնունդ», 1986, սցենարը՝ Ֆ–ի, ևն): Նկարահանել է նաև մոտ 200 կինոհանդես:

ՖՐԱՆԳՈՒԼՅԱՆ Ռուզաննա Ռոբերտի (ծ. 1964), թոքաբան: Բժշկ. գիտ. դ–ր (2002): Ժաննա *Դևորգյանի* դուստրը: 2004–ից՝ Էդինբուրգի Ռոյալ Ինֆյմըրրի հիվանդանոցում: Աշխ–ները վերաբերում են թոքերի քրոնիկ. փակող. (օբստրուկտիվ) հիվանդությունների ժամանակ սրտի աջ փորոքի և արյան փոքր շրջանառության կառուցվածքաֆունկցիոնալ փոփոխությունների վաղ ախտորոշմանը և դեղորայք. կարգավորման մշակմանը:

ՖՐԱՆԿ (Frank) Աննա (1929–1945), գրառումների հրեա հեղինակ: Ֆաշիստ. ահաբեկչությունից թաքնվել է Նիդեռլանդներում: Նրա «Աննա Ֆրանկի օրագիրը» (հրտ.՝ 1947, հայ.՝ 1962) ֆաշիզմը մերկացնող փաստաթուղթ է: Զոհվել է համակենտրոնացման ճամբարում: Գիրքը թարգմանվել է բազմաթիվ լեզուներով:

ՖՐԱՆԿ Գլեբ Միխայլովիչ (1904–1976), ռուս. կենսաֆիզիկոս (ծագումով՝ հրեա): ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1966), ԲԳԱ թղթ. անդամ (1945): Ի. Մ. *Ֆրանկի* եղբայրը: Աշխ–ները վերաբերում են ԱՄՇ–ման կենսբ. ազդեցությանը, նյարդ. գրգռման, մկան. կծկման կենսաֆիզիկային: ԽՍՀՄ ԳԱ կենսբ. հետազոտությունների գիտ. կենտրոնի կազմակերպիչ–տնօրեն (1961–67): ԽՍՀՄ Պետ. մրց. (1949, 1951, 1978՝ հետմահու):

ՖՐԱՆԿ Իլյա Միխայլովիչ (1908–1990), ռուս. ֆիզիկոս (ծագումով՝ հրեա): ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1968): Գ. Մ. *Ֆրանկի* եղբայրը: *Վավիով–Չերենկովի ճառագայթման* տեսության հեղինակներից: Ուսումնասիրել է նեյտրոնների ֆիզիկան: Նոբելյան մրց. (1958, Ի. Ե. *Տամմի* և Պ. Ա. *Չերենկովի* հետ): ԽՍՀՄ Պետ. մրց. (1946, 1953, 1971):

ՖՐԱՆԿ (Franck) Ջեյմս (1882–1964), գերմանացի ֆիզիկոս: ԽՍՀՄ ԳԱ. արտ. թղթ. անդամ (1927): 1935–ից՝ ԱՄՆ–ում: Էլեկտրոնների հարվածներով ատոմների (Ֆ–Հերցի փորձ, 1913) դաս. հետազոտությունների հեղ. (Գ. *Հերցի* հետ): Աշխ–ները վերաբերում են մոլ. սպեկտրադիտմանը, լուսասինթեզին: Նոբելյան մրց. (1925, Գ. Հերցի հետ):

ՖՐԱՆԿ Սեզար (1822–1890), բելգիացի կոմպոզիտոր, երգեհոնահար: 1843–ից՝ Փարիզում: Ֆրանս. կոմպոզիտոր. դպրոցի հիմնադիրը: Հեղինակ է «Հուլդա» (1885) և այլ օպերաների, սիմֆոնիայի (1888), «Անիծյալ որսորդը» (1882) սիմֆ. պոեմի, «Սիմֆոնիկ վարիացիաների» (1885), «Քավություն» սիմֆոնիա–պոեմի (2–րդ խմբագրությունը՝ 1874), օրատորիաների, կամեր–գործիք., դաշնամուր., երգեհոն. և այլ երկերի:

ՖՐԱՆԿ Սեմյոն Լյուդվիգովիչ (1877–1950), ռուս. կրոն. փիլ.: 1922–ից՝ վտարանդի: Ֆ–ի հայացքները «լեգալ մարքսիզմից» անցել են կրոն. փիլ–յան, մշակել է «համամիասնության» մասին ուսմունք՝ ապոֆատիկ աստվածաբանության և քրիստ. պլատոնականության ավանդույթներով: Հեղինակ է «Կյանքի իմաստը» (1926), «Հասարակության հոգևոր հիմքերը» (1930), «Իրականությունը և մարդը: Մարդկային կեցության մետաֆիզիկան» (հրտ.՝ 1956) և այլ աշխ–ների:

ՖՐԱՆԿ (ֆրանս.՝ Franc), մինչև 1999–ը՝ Ֆրանսիայի դրամ. միավորը. հավասար է 100 սանտիմի: Ներդրվել է 1799–ին՝ փոխարինելով լիվրին: 1960–ին ինֆլյացիայի պատճառով փոխարինվել է նոր ֆրանկով՝ 100:1 հարաբերակցությամբ, 1999–ին՝ *եվրոյով*:

ՖՐԱՆԿԼԵՆԴ (Frankland) Էդուարդ (1825–1899), անգլիացի քիմիկոս, օրգանիկ: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1876): Արժեքականության և մետաղօրգ. միացությունների մասին ուսմունքի հիմնադիրը:

ՖՐԱՆԿԼԻՆ (Franklin) Բենջամին (1706–1790), ամերիկացի լուսավորիչ, պետ. գործիչ, գիտնական, ԱՄՆ Անկախության հռչակագրի (1776) և Սահմանադրության (1787) հեղինակներից: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1789, 1–ին ամերիկացին): Հիմնադրել է Հս. Ամերիկայի գաղութների առաջին հանրային գրադարանը (1731, Ֆիլադելֆիա), Փենսիլվանիայի համալսարանը (1751), Ամերիկ. փիլ. ընկ–ը (1743): Առաջարկել է վերացնել սնամոքրների ստրկությունը, մշակել է էլեկտրականության միացյալ տեսություն: Մթն. էլեկտրականության առաջին հետազոտողներից էր, առաջարկել է շանթարգելը: Պատկերը տպված է ամերիկ. 100–դոլարանոց թղթադրամի վրա:

ՖՐԱՆԿ–ԿԱՄԵՆԵՑԿԻ Դավիդ Ալբերտովիչ (1910–1970), հրեա ֆիզիկոս և աստղաֆիզիկոս: Աշխ–ները վերաբերում են պլազմայի ֆիզիկային, այրման և պայթյունի տեսությանը, քիմ. կինետիկային, աստղերի կառուցվածքին, էվոլյուցիային և բարախումներին, տիեզ. հարված. ալիքներին: ԽՍՀՄ Պետ. մրց. (1949–ին՝ 2, 1953):

ՖՐԱՆԿ–ՀԵՐՑԻ ՓՈՐՁ, ապացուցում է, որ ատոմի ներքին էներգիան կարող է ընդունել միայն ընդհատ արժեքներ: 1913–ին կատարել են Ջ. *Ֆրանկը* և Գ. *Հերցը*:

ՖՐԱՆԿՆԵՐ (լատ.՝ Franci, գերմ.՝ Franken), արևմտագերմ. ցեղերի (խամավներ, բրուկտերներ, ուսիբետներ, տենկտերներ, սուգամբրներ ևն) խումբ: Առաջին անգամ հիշատակվում են III դ–ի կեսին: Բաժանվում են 2 խմբի: Մեկի կորիզը կազմել են սալիական (ծովամերձ) Ֆ., որոնք, ձուլվելով տեղի գալիացիներին և հռոմեացիներին, Սասի ու Լուարայի միջագետքում բնակվող Ֆ–ի հետ հետագայում մտել են Հս. Ֆրանսիայի, ինչպես նաև վալլոնների, իսկ Լուարայից հվ բնակվող Ֆ.՝ Հվ. Ֆրանսիայի ժողղ–ների կազմի մեջ: Մյուս խումբը Հռենոսի ափերով դեպի վեր՝ մինչև Սայն բնակվող Ֆ. են:

ՖՐԱՆԿՈ Իվան Յակովլևիչ (1856–1916), ուկրաինացի գրող, գիտնական: Հեղինակ է «Բարձունքներից ու ցածրավայրերից» (1887), «Թռչնած տերևներ» (1896),

«Տխրության օրերից» (1900) և բանաստեղծությունների ու պոեմների այլ ժող–ների, «Կայենի մահը» (1889), «Իվան Վիշնևսկի» (1900), «Մովսես» (1905) պոեմների, «Բորիսլավը ծիծաղում է» (1881–82) և այլ վիպակների, «Լեյլն ու Պոլելը» (1887), «Խաչմերուկ» (1900) վեպերի, «Գողացված երջանկություն» (1891) դրամայի: Հայ. հրատարակվել են «Մեղաւորն ինքն է» (1905), «Պատմվածքներ» (1948), «Ածխագործը: Հեքիաթներ և պատմվածքներ» (1959) ժող–ները, «Բուդկա № 27» (1956) դրաման:

ՖՐԱՆԿՈՒԲԱՀԱՄՈՆԴԵ (Franco Bahamonde) Ֆրանսիսկո (1892–1975), իսպ. պետության ղեկ–ը (կառուդիլո)՝ 1939–75–ին, 1937–75–ին՝ Իսպ. ֆալանգի (Իսպ. ֆաշիստ. կուս–յուն) առաջնորդը, 1939–1973–ին՝ վարչապետ: 1936–ին գլխավորել է Իսպանիայի Հանրապետության դեմ խռովությունը:

ՖՐԱՆԿՈԿԱՆԱԴԱՑԻՆԵՐ, ժողդ Կանադայի Քվեբեկ, մասամբ՝ Օնտարիո և Նյու Բրանսուիկ պրովինցիաներում: Ընդհ. թիվը՝ շուրջ 11,9 մլն (2014): Ապրում են նաև ԱՄՆ–ում: Խոսում են ֆրանս–ի կանադ. տարբերակով: Հավատացյալները հիմնականում կաթոլիկ են:

ՖՐԱՆԿՈՆՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ, Սալիական հարստություն, Հռոմ. սրբազան կայսրության գերմանացի թագավորների ու կայսրերի հարստություն 1024–1225–ին: Հիմնադիրը՝ Կոնրադ II, գլխ. ներկայացուցիչը՝ Հենրիխ IV Սալի:

ՖՐԱՆՍ (France) Անատոլ (Թիբո Անատոլ Ֆրանսուա, 1844–1924), ֆրանսիացի գրող: Ֆրանսիայի ԳԱ անդամ (1896): Հեղինակ է «Ոսկե պոեմներ» (1873) ժող–ի, «Կորնթոսյան հարսանիքներ» (1876) դրամատիկ. պոեմի, «Միլվեստր Բոննարի ոճիրը» (1881, հայ.՝ 1922), «Թայիս» (1890, հայ.՝ 1910), երգիծաֆանտաստիկ. «Պինգվինների կղզին» (1908), «Հրեշտակների ապստամբությունը» (1914, հայ.՝ 1959), «Աստվածները ծարավի են» (1912, հայ.՝ 1925) և այլ վեպերի, «Բալթազար» (1889), «Սադափե տուփը» (1892), «Սուրբ Կլարայի ջրհորը» (1895), «Կլիո» (1900) նովել–ների, «Էպիկուրի պարտէզը» (1894, հայ.՝ 1898) աֆորիզմների ժող–ների, «Ժամանակակից պատմություն» (1897–1901) երգիծ. քառերգության, «Ժաննա դ'Արկ» (1908) պատմ. աշխ–յան, «Երկխոսութիւններ վարդի թփի տակ» (1917–24, հրտ.՝ 1925) փիլ. երկի: Ֆ. եղել է հայ ժողդ–ի անկեղծ բարեկամը, գրել է հոդվածներ, ուղերձներ, կազմակերպել հավաքներ՝ ի պաշտպ–յուն հայերի: Հայ. հրատարակվել են նաև «Երեք դար ու կէս յետոյ: Ծննդեան տօնի ֆանտազիա» (1912), «Կարմիր շուշան» (1946), «Կրենքըրիլ, Պյուտուա, Ռիքե և շատ օգտակար պատմվածքներ» (1959), «Սպիտակ քարի վրա» (1959) և այլ գրքեր: Նոբելյան մրց. (1921):

«ՖՐԱՆՍ ՊՐԵՍ» (Agence France–Press, AFP), ֆրանս. լրատվ. գործակալություն: Ստեղծվել է 1944–ին Փարիզում՝ աշխարհի հնագույն «Հավաս» [հիմնադրել է Շառլ–Լուի Հավասը (1783–1858) 1835–ին, 1914–ից՝ Ֆրանս. տեղեկատվ. գրասենյակ] լրատվ. գործակալության հիման վրա: Միջազգ. բաժանմունքներ ունի Վաշինգտոնում, Հոնկոնգում, Նիկոսիայում, Մոնտեվիդեոյում, գրասենյակներ՝ 110 (այդ թվում՝ ՀՀ–ում) երկրում: Տեղեկատվություն է հաղորդում ֆրանս., անգլ., իսպ., գերմ., արաբ. և պորտուգ. (հասանելի է շուրջ 150, հիմնականում՝ ֆրանկոֆոն երկրներում):

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ֆրանս.՝ JAF – ԺԱՖ), հիմնադրել են *Դիմադրության շարժման* հայ մարտիկները 1945–ի աշնանը Փարիզում: 1947–ից՝ Ժողովրդավար. երիտասարդ. համաշխ. դաշնության անդամ, 1949–ից՝ խաղաղության կողմնակիցների շարժման մասնակից: Մասնաճյուղեր ունի Մարսելում, Լիոնում, Վալանսում և Ֆրանսիայի մյուս հայաշատ ք–ներում: Համագործակցում է Ֆրանսահայ մշակույթ. միության հետ: Փարիզում կազմակերպել է գրկ–յան և արվ–ի փառատոներ, «Հայկական արվեստը Ուրարտուից մինչև մեր օրերը» (1970), «Մարտիրոս Սարյան» (1982), «Հայկական Փարիզը» (1990), «Կիլիկիայի թագավորությունը» (1993), «Սուրբ Հայաստան» (2008) և այլ ցուցահանդեսներ: Միությունը հրատարակում է «Նոթերը Վուա» («Մեր ձայնը») ամսաթերթը (1951–ից): Միության շրջանակներում գործում են «Արաքս» պարախումբը (1957), «Սասուն»նվագախումբը (1962) ևն:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, ստեղծվել է 1949–ին Փարիզում. վարչություններ ունի Մարսելում, Լիոնում, մասնաճյուղեր՝ Ֆրանսիայի շուրջ 20 հայաշատ քաղաքներում: Երկու տարին մեկ գումարվում է միության համագումարը: Կազմակերպում է հայ մշակույթին ու գրկ–յանը նվիրված ցուցահանդեսներ, փառատոներ: Համագործակցում է *Ֆրանսահայ երիտասարդական միության* հետ: Հրատարակում է «Թրեթ դ'Ունիոն» («Միության դիմագիծ») պաշտոնաթերթը: Միության նախագահներ են եղել քարտեզագետ Յ. Խանզադյանը (պատվ. նախագահ), Հ. Սվաճյանը, Ա. Ալիքսանյանը, Ս. Թաթիկյանը և ուր., Ժորժ Սարյանը (1996–ից):

«ՖՐԱՆՍԱՀԱՅ ՏԱՐԵԳԻՐՔ», ազգ., մշակութ., գր. պարբերագիրք (1926–27, Փարիզ, 2 գիրք):

«ՖՐԱՆՍ–ԱՐՄԷՆԻ» («France–Arménie» – «Ֆրանսիա–Հայաստան»), ազգ., քաղ., պատմ., գր. ամսաթերթ (1982–ից, Լիոն՝ ֆրանս., 2002–ից 8 էջը՝ հայ.): Հայ դատի պաշտպ–յան կոմիտեի հրտ–յուն: Խմբ–ներ՝ Վ. Մուրադյան, Գ. Քեփենեկյան, Ժ. Մարտիրոսյան, Վարուժան Մարտիկյան:

ՖՐԱՆՆԵՐԵՆ, Ֆրանսիայի ազգ. և պետ., Բելգիայի (ֆլամանդ–ի հետ), Շվեյցարիայի (գերմ–ի, մասամբ՝ իտալ–ի հետ), Կանադայի (անգլ–ի հետ) պետ. լեզուն: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի ռոման. ճյուղին: Գրավոր հնագույն հուշարձաններն ավանդվել են IX դ–ից: Բաժանվում է 3 շրջանի՝ հին (IX–XII դդ.), միջին (XIV–XVI դդ.) և նոր (XVI դ–ից):

ՖՐԱՆՍԻԱ, (France), **Ֆրանսիայի Հանրապետություն** (République Française), պետություն Արմ. Եվրոպայում: Սահմանակից է Բելգիային, Լյուքսեմբուրգին, Գերմանիային, Շվեյցարիային, Իտալիային, Մոնակոյին, Իսպանիային և Անդորրային: Տարածքը՝ 551,5 հզ. *կմ²*, բն.՝ 66,7 մլն (2016): Մայրաքաղաքը՝ ***Փարիզ***: Պետ. լեզուն՝ ֆրանս: Կառավարման ձևը՝ նախագահահանրապետ.: Պետության գլուխը նախագահն է, օրենսդիր մարմինը՝ երկպալատ խորհրդարանը (ԱԺ և Սենատ): Կազմված է 22 տարածաշրջանից (ներառում են 96 դեպարտամենտ), 5 անդրծով. տարածաշրջ. դեպարտամենտներից (Գվատելուպա, Գվիանա, Մարտինիկա, Մայոտա և Ռեյունյոն), 5 անդրծով. համայնքներից (Ֆրանս. Պոլինեզիա, Ուոլիս և Ֆուտունա, Սեն Պիեռ և Միկելոն, Սեն Մարտեն և Սեն Բարթելեմի) և հատուկ կարգավիճակով անդրծով. տարածքներից (Նոր Կալեդոնիա, Ֆրանս. Հվ. և Անտարկտիկ. տարածքներ): Հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է: Անդամակցում է ՄԱԿ–ին, ԵՄ–ին, ՆԱՏՕ–ին (1949–ից), ԵԱՀԿ–ին, ԵԽ–ին ևն: Ունի բարձր զարգացած տնտ–յուն: ՀՆԱ–ն 1 շնչի հաշվով 43,0 հզ. ԱՄՆ դոլար է (2013): Արտահանում է մեքենաներ և սարքավորումներ, ոգելից խմիչք, գյուղմթերք, դեղեր, օծանելիք ևն, ներմուծում՝ նավթ, բնական գազ, մեքենաներ և սարքավորումներ, մետաղներ ևն: Դրամ. միավորը՝ եվրո:

Մ. թ. ա. I հզ–ամյակի վերջին Ֆ–ի տարածքում բնակվել են կելտերը, որոնց հռոմեացիները կոչել են գալլեր: Մ. թ. ա. II դ–ի վերջ–I դ–ի կեսին Գալիան նվաճել են հռոմեացիները և այնտեղ ստեղծել մի շարք պրովինցիաներ, ենթարկել ռոմանականացման: II–IV դդ–ում տարածվել է քրիստոնեությունը: III–IV դդ–ում Գալիան նվաճել են գերմ. ցեղերը (վեստգոթեր, բուրգունդներ, ֆրանկներ): VI դ–ի կեսին Ֆ–ի ամբողջ տարածքը միավորվել է Ֆրանկական պետության մեջ: VII դ–ում Ֆ–ի տարածքում առանձնացել են Նեյստրիա, Բուրգունդիա, Աքվիտանիա մարզերը (որոնք փաստորեն անկախ էին): Ֆրանկներն աստիճանաբար ձուլվել են գալա–հռոմ. բնակչությանը: 843–ին Կառոլինգների կայսրության բաժանման հետևանքով առանձնացել է Արևմտաֆրանկ. թագավորությունը. այդ ժամանակվանից էլ Ֆ. գոյություն ունի որպես ինքնուրույն պետություն: X դ–ից երկիրը կոչվել է «Ֆ.»: XI–XIII դդ–ում ֆրանս. ասպետները մասնակցել են խաչակրաց արշավանքներին: Ֆիլիպ II Օգոստոսը (կառավարել է 1180–1223–ին) XIII դ–ի սկզբին Անգլիայից հետ է նվաճել և իր թագավորությանն է միացրել Ֆ–ի տարածքի զգալի մասը: Լյուդովիկոս IX–ը (1226–70) հաջողությամբ վարել է պետության կենտրոնացման քաղ–յուն: Փարիզն աստիճանաբար դարձել է երկրի քաղ. ու տնտ. կենտրոնը: Ֆիլիպ IV Գեղեցիկը (1285–1314) անհաջող փորձ է արել իրեն ենթարկելու Ֆլանդրիան: Նրա օրոք Ֆ–ի թագավորի և Հռոմի պապի միջև սկսված սուր բախումը (1296–1303) ավարտվել է թագավոր. իշխանության հաղթանակով (տես *Ավինյոնյան գերություն պապերի*): Անգլիայի դեմ Հարյուրամյա պատերազմը (1337–1453) մղվել է Ֆ–ի տարածքում, էապես դանդաղեցրել է երկրի զարգացումը: Ժաննա դ'Արկի (մոտ 1412–31) գլխավորությամբ ֆրանս. զորքերի տարած հաղթանակները և անգլիացիների վտարումը Ֆ–ից ամրապնդել են թագավոր. իշխանությունը: XV դ–ի 2–րդ կեսին, Լյուդովիկոս XI–ի օրոք (1461–83), հիմնականում ավարտվել է Ֆ–ի միավորումը միասն. կենտրոնացված պետության մեջ: Արմ. Եվրոպայում տիրույթներ նվաճելու և քաղ. ազդեցություն ձեռք բերելու համար ֆրանս. թագավորները երկարատև պայքար են մղել *Հաբսբուրգների* դեմ: XVII դ–ում ֆրանս. գաղութարարները հաստատվել են Ամերիկայում (Կանադա, Վեստ Ին–

դիա) և Հնդկաստանի մի մասում: XVII դ–ի 2–րդ կեսին Ֆ. Արմ. Եվրոպայի առավել զորեղ տերությունն էր: Իսպ. ժառանգության համար (1701–14) և Յոթնամյա (1756–63) պատերազմների հետևանքով Ֆ. ստիպված էր զիջել Հս. Ամերիկայի և Հնդկաստանի գրեթե իր բոլոր գաղութները: Լյուդովիկոս XVI–ի օրոք (1774–92) Ֆ. թևակոխել է միապետության սուր ճգնաժամի շրջան, որը հանգեցրել է Ֆրանս. մեծ հեղ–յանը: 1792–ին վերացվել է միապետությունը, և հռչակվել (սեպտ. 21–ին) հանրապետություն: 1793–94–ին հաստատվել է Յակոբինյան բռնապետությունը: 1794–ի հուլիսի 27–28–ին տեղի է ունեցել հակահեղ. Տերմիդորյան հեղաշրջումը, որն իշխանության է բերել բուրժուազիային: Բրյումերի տասնութի (1799–ի նոյեմբ. 9–10) հեղաշրջման հետևանքով, որն իրականացրել է Նապոլեոն I Բոնապարտը, Ֆ–ում տապալվել է Դիրեկտորիան, և հաստատվել է ռազմ. բռնապետություն կոնսուլության ձևով: 1804–ին դառնալով կայսր՝ Նապոլեոն I–ը Եվրոպայում մղել է պատերազմներ, որոնց հետևանքով ընդլայնվել են Ֆ–ի սահմանները: Ֆրանս. զորքերը Նապոլեոնի գլխավորությամբ հասել են մինչև Մոսկվա, որտեղ գլխովին ջախջախվել են (տես *Հայրենական պատերազմ 1812*): 1814–ին վերստին իշխանության գլուխ եկած Բուրբոնների հարստությունը տապալվել է 1830–ի Հուլիսյան հեղ–յամբ: Թագավոր է հռչակվել դուքս Լուի Ֆիլիպ Օռլեանցին: 1848–ի Փետր. հեղ–յունը տապալել է միապետությունը և հաստատել Երկրորդ հանրապետությունը (1848–52): 1851–ի դեկտ. 2–ի պետ. հեղաշրջման հետևանքով Ֆ–ում հաստատվել է Լուի Նապոլեոն Բոնապարտի (1852–ից՝ Նապոլեոն III կայսր) բռնապետությունը՝ այսպես կոչված Երկրորդ կայսրությունը (1852–70), որը տապալվել է 1870–ի Սեպտ. հեղ–յան հետևանքով՝ Ֆրանս–պրուս. պատերազմում (1870–71) Ֆ–ի կրած պարտությունից հետո: Ֆ. նորից հռչակվել է հանրապետություն: 1871–ին ստեղծվել է ***Փարիզի կոմունան***, որը դաժանաբար ճնշել է Թիերի կառ–յուն: 1871–ի Ֆրանկֆուրտի հաշտության պայմանագրով Ֆ. զրկվել է Էլզասից և Լոթարինգիայի մեծ մասից: 1875–ին ընդունվել է Երրորդ հանրապետության (1870–1940) սահմանադրությունը: XIX դ–ի վերջին հիմնականում ավարտվել է ֆրանս. գաղութ. կայսրության ստեղծումը, որը Բրիտ. կայսրությունից հետո երկրորդն էր իր չափերով: Անտանտի կազմում Ֆ. մասնակցել է Ա.Հ.Պ–ին: 1936–38–ին իշխանության ղեկին եղել է Ազգ. ճակատի կառ–յունը, որն արգելել է ֆաշիստ. կազմ–յունների գործունեությունը, իրականացրել աշխատավորների վիճակի բարելավման միջոցառումներ: 1940–ին Ֆ. գրավել են գերմ. և իտալ. զորքերը: Իշխանության է եկել «Վիշի» ֆաշիստամետ ռեժիմը: Ֆ–ում Դիմադրության շարժումն առաջնորդել են Ֆ–ի կոմկուսն ու Շ. դը Գոլի «Ազատ Ֆրանսիա» (1942–ից՝ «Մարտնչող Ֆրանսիա») շարժումը: 1944–ին Ֆ. ազատագրել են հակահիտլերյան դաշինքի և Դիմադրության շարժման զորքերը: 1946–ին ընդունվել է Չորրորդ հանրապետության (1946–58) սահմանադրությունը: 1954–ին Ֆ. ստորագրել է Հնդկաչինում խաղաղության վերականգնման՝ Ժնևի համաձայնագիրը: 1956–ին Ֆ. մասնակցել է Եգիպտոսի դեմ Անգլո–ֆրանս–իսրայել. ագրեսիային: 1958–ին ընդունվել է Հինգերորդ հանրապետության սահմանադրությունը, որը մեծ լիազորություններ է տվել նախագահին: Նախագահ է դարձել Շ. դը Գոլը: 1960–ին անկախացել է Ֆ–ի աֆրիկ. գաղութների մեծ մասը, 1962–ին՝ Ալժիրը: 1968–ին զանգված. հուզումների պայմաններում հրաժարական է տվել Շ. դը Գոլը: Հետագայում Ֆ–ի նախագահներ են ընտրվել Ժ. Պոմպիդուն (1969–74), Ժ. դ'Էստենը (1974–81), Ֆ. Միտերանը (1981–95), Ժ. Շիրակը (1995–2007), Ն. Սարկոզին (2007–12), Ֆ. Օլանդը (2012–17) և Է. Մակրոնը (2017–ից):

Առաջին հայերը Ֆ–ում հաստատվել են վաղ միջնադարում՝ VI դ–ում: Նրանց թիվն աստիճանաբար ավելացել է Կիլիկիայի հայկ. պետության անկումից (XIV դ.) հետո, ապա՝ XV–XVI դդ–ում, երբ հայկ. փոքրաթիվ գաղութներ են հիմնվել Մարսելում, Փարիզում և մի քանի այլ ք–ներում: Հայերը դեռևս XVII դ–ում բացել են առաջին սրճարանները Մարսելում և Փարիզում, XVIII–XIX դդ–ում հիմնադրել են տպարաններ, հայկ. դպրոցներ, հրատարակել թերթեր ու ամսագրեր: Հետագա տարիներին ֆրանսահայ համայնքի ստվարացման միտումը շարունակվել է հիմնականում Մեծ եղեռնից փրկված գաղթականների, Մերձ. և Միջին Արևելքից ու Հայաստանից արտագաղթածների հաշվին: Ներկայում հայերի թիվը շուրջ 450 հզ. է, հիմնականում բնակվում են Փարիզում, Մարսելում, Լիոնում, Նիսում, Վալանսում են: Գործում են հայկ. 6 ամենօրյա (Թարգմանչաց, Պարսամյան, Սուրբ Մեսրոպ ևն) և շուրջ 50 մեկօրյա դպրոցներ, հայկ. ավանդ. կուս–յունները, ՀՔԿՄ մասնաճյուղը, բազմաթիվ հայրենակց. միություններ, մշակութ. ընկ–ներ և այլ կազմ–յուններ: Ֆրանս. մշակույթի և գիտ–յան զարգացման գործում իրենց ավանդն ունեն հայազգի բազմաթիվ գործիչներ՝ գրողներ՝ Ֆրանսիայի ակադ–ի անդամ Անրի Թրուայան (Թորոսյան), Շահան Շահնուրը, Վազգեն Շուշանյանը, Արշակ Չոպանյանը, նկարիչներ Գառզուն (Գառնիկ Զուլումյան), Ժանսեմը (Ժան Սեմերջյան), Էդգար Շահինը, Վարդան Մախոխյանը, քանդ. Հակոբ Գյուրջյանը, երգիչներ Շառլ Ազնավուրը, Ռոզի Արմենը, Սիլվի Վարդանը, երգահան Ժորժ Կառվարենցը, կինոռեմադրիչ Անրի Վեռնոյը (Աշոտ Մալաքյան), Ֆրանսիայի փորձագետ–խորհրդատու բժիշկների միության նախագահ Էդուարդ Ադամյանը, արհեստ. աղամանդի ստեղծող Հրանտ Ճնահիրճյանը, պետ. գործիչ Պատրիկ Դևեջյանը և շատ ուր., գիտնականներ Նիկողայոս Ադոնցը, Զատիկ Խանզադյանը և ուր.:

1998–ի մայիսի 29–ին Ֆ–ի խորհրդարանը ճանաչել է 1915–ի Հայոց ցեղասպանության փաստը, իսկ 2001–ին՝ օրենքով, 2016–ին ընդունել է «Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացման օրինագիծը»:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ *Հայաստանի*, Հայ–ֆրանս. միջպետ. համալսարան, հիմնադրվել է 2000–ին Երևանում: Շրջանավարտներն ստանում են ՀՀ և Ֆրանսիայի պետ. նմուշի դիպլոմ: 2015–ին ուներ շուրջ 1000 ուսանող: Ռեկտորներ՝ Սերգեյ Բիչախչյան, Էդուարդ Զոհրաբյան, Պոլ Ռուսեն, Անն–Մարի Շլոսեր, Ժոել Լը Մորզելեկ, Ժան–Մարկ Լավեստ (2015–ից):

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, Ֆրանսիայի սոցիալ. և քաղ. համակարգի խոշոր փոխակերպում XVIII դ–ի վերջին, որի արդյունքում կործանվել են հին կարգերը (ֆրանս.՝ Ancien Regime) և բացարձակ միապետությունը, հռչակվել է Ֆրանսիայի առաջին հանրապետությունը (1792–ի սեպտ.): Սկսվել է ***Բաստիլի*** գրավումով (1789–ի հուլիսի 14), ավարտվել Բրյումերի 18–ի հեղաշրջումով (1799–ի նոյեմբ. 9):

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ, աշխարհի հնագույն և խոշորագույն գրադարաններից, ֆրանսալեզու գրկ–յան ամենահարուստ հավաքածուն **Փարիզում**: Հիմնադրվել է 1480–ին որպես թագավոր. գրադարան: 1795–ին Կոնվենտն այն հռչակել է ազգ.: Ունի 31 մլն պահպան. միավոր, այդ թվում՝ 14 մլն գիրք, շուրջ 160 հզ. ձեռագիր (որից ավելի քան 300–ը՝ հայ.), ավելի քան 6 մլն փորագրություններ և փորագրանկարներ, 600 հզ. անուն պարբ. հրտ–յուններ, 800 հզ. քարտեզ, 500 հզ. մեդալ ու դրամ ևն: Ֆ. ա. գ–ի ֆոնդերից թվայնացված են և հանրահասանելի:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԱ (Académie Francaise), Ֆրանսիայի ազգ. մշակույթի, գիտ–յան, քաղ. գործիչների անվանի ներկայացուցիչների հաստատություն: Հիմնադրվել է 1635–ին՝ կարդինալ Ռիշելյեի նախաձեռնությամբ: Գլխ. խնդիրը ֆրանս–ի և ֆրանս. գրկ–յան զարգացմանը նպաստելն է, ֆրանս. բառարանների հրտ–յունը: Կազմը մշտական է՝ «40 անմահներ»: Ֆ. ա–ի անդամներ են եղել Ժ–Բ. Կոլբերը, Ժ. Ռասինը, Պ. Կոռնելը, Դ'Ալամբերը, Վոլտերը, Շ. Կալմինը, Վ. Հյուգոն, Լ. Պաստյորը, Ա. Ֆրանսը և ուր.: *Ֆրանսիայի ինստիտուտի* կազմում է:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ (L'Institut de France), Ֆրանսիայի պաշտոն. գլխ. գիտ. հաստատությունը, հիմնադրվել է 1795–ին Փարիզում: Մինչև 1806–ը՝ Գիտ–յան և արվ–ի ազգ. ինստ.: Միավորում է 5 ակադ.՝ ***Ֆրանսիայի ակադեմիան*** (1635), Արձանագրությունների և գեղարվ–ի ակադ–ը (1663, ուսումնասիրում է հնագույն և արլ. լեզուները, միջնադար. բարբառները, պատմություն, 55 ակադ., 40 արտ. անդամ, 50 ֆրանսիացի և 50 արտ. թղթ. անդամ), ***Փարիզի գիտությունների ակադեմիան***, Արվ–ի ակադ–ը (1803, 48 ակադ., 16 արտ. անդամ, 57 թղթ. անդամ) և Բարոյաքաղ. գիտ–յունների ակադ–ը (1832, 50 ակադ., 12 արտ. անդամ, 60 թղթ. անդամ): Համախմբում է գիտ–յան, գրկ–յան և արվ–ի նշանավոր գործիչներին՝ գիտ–յունների ու արվ–ի զարգացմանը նպաստելու նպատակով: Ֆ. ի. ղեկավարում են նախագահությունը, նախագահը և անդամները (ընտրվում են ամեն տարի): Ֆ. ի–ի անդամ է եղել Վիկտոր ***Համբարձումյանը***:

ՖՐԱՆՍԻԱՅԻՆԵՐ, ժողդ, Ֆրանսիայի հիմն. բնակչությունը (62,3 մլն, 2008): Ապրում են նաև ԱՄՆ–ում (4,9 մլն, 2000), Շվեյցարիայում (1,34 մլն), Իտալիայում, Բելգիայում, Սենեգալում, Մադագասկարում և այլուր: Կանադայում կազմում են ազգ. հանրույթ՝ ֆրանկոկանադացիներ՝ քվեբեկցիներ (7,5 մլն) և ակադիցիներ (0,5 մլն): Լեզուն՝ ֆրանս.: Հավատացյալները հիմնականում կաթոլիկ են:

ՖՐԱՆՍԻՈՒՄ (Francium), Fr, տարրերի պարբեր. համակարգի I խմբի քիմ. տարր: Կարգաթիվը՝ 87, ա. զ.՝ 223,019: Ալկալիական մետաղ է (ամենաակտիվը): Ճառագայթակտիվ է, կայուն է ^{223}Fr ($T_{1/2}$ = 21,8 *ր*) իզոտոպը: Կոչվել է տարրը հայտնաբերած Մ. Պերեյի (1909–1975) հայրենիքի՝ Ֆրանսիայի անունով: Բնության մեջ հազվադեպ է հանդիպում և բոլոր ճառագայթաակտիվ տարրերից ամենաանկայունն է: Խտ.՝ 2,3–2,5 $q/ղմ^3$, $t_{հալ.}$՝ 18–21°C:

ՖՐԱՆՍ–ՊՐՈՒՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ 1870–71, պատերազմ Ֆրանսիայի (ձգտում էր պահպանել իր առաջատար դիրքը Եվրոպայում և խանգարել Գերմանիայի միավորմանը) և Պրուսիայի (հանդես էր գալիս մի քանի գերմ. պետությունների հետ) միջև: Պատերազմի հետևանքով ընկել է Ֆրանսիայի 2-րդ կայսրությունը և ավարտին հասել Գերմանիայի միավորումը՝ Պրուսիայի գլխավորությամբ: Ավարտվել է Ֆրանկֆուրտի հաշտության պայմանագրով (1871):

ՖՐԱՆՑ I (Franz, 1708–1765), Հռոմ. սրբազան կայսրության կայսր՝ 1745-ից, Ավստրիայի Հաբսբուրգների հարստության Հաբսբուրգ-Լոթարինգյան ճյուղի հիմնադիրը:

ՖՐԱՆՑ I (1768–1835), Ավստրիայի թագավոր՝ 1792-ից, կայսր՝ 1804-ից՝ Հաբսբուրգների հարստությունից: Հռոմ. սրբազան կայսրության (1792–1806-ին՝ Ֆրանց II անունով) վերջին կայսրը: Ֆրանսիայի դեմ եվրոպ. միապետների դաշինքի նախաձեռնողներից: Նրա օրոք Ավստրիան պարտվել է Ֆրանսիային 4 պատերազմներում (1792–1809): Դուստրը՝ Մարի-Լուիզան, ամուսնացել է Նապոլեոն I-ի հետ: Սրբազան միության կազմակերպիչներից:

ՖՐԱՆՑ ՅՈՍԻՖ I (Franz Joseph, 1830–1916), Ավստրիայի կայսր և Հունգարիայի թագավոր՝ 1848-ից՝ Հաբսբուրգների հարստությունից: Ճնշել է 1848–49-ի հեղ-յունն Ավստրիայում և Հունգարիայում: 1867-ին Ավստրիայի կայսրությունը վերափոխել է Ավստրո-Հունգարիա երկմիավոր միապետության: 1879-ին Գերմանիայի հետ կնքել է դաշնակցային պայմանագիր, որը դարձել է *Եռյակ միության* (1882) հիմքը:

ՖՐԱՆՑ ՅՈՍԻՖ II (1906–1989), Լիխտենշտեյնի իշխան՝ 1938–84-ին:

ՖՐԱՆՑ ՅՈՍԻՖԻ ԵՐԿԻՐ, կղզեխումբ Բարենցի ծովի հս-արլ-ում (ՌԴ): Ընդհ. տարածքը՝ 16,1 հզ. *կմ*^{2}: Ներառում է շուրջ 190 կղզի: Բարձր.՝ մինչև 620 *մ*: Ավելի քան 80 %-ը ծածկված է սառույցով: Հայտնագործել է Յ. Պայերի ավստրո-հունգ. արշավախումբը 1873-ին և կոչել Ավստրիայի կայսր *Ֆրանց Յոսիֆ I*-ի անունով:

ՖՐԱՆՑ ՖԵՐԴԻՆԱՆԴ (Franz Ferdinand, 1863–1914), Ավստրիայի էրցհերցոգ: *Ֆրանց Յոսիֆ I*-ի զարմիկը, գահաժառանգ: 1898-ից՝ գլխ. հրամ-ի տեղակալ, Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցման (1908) նախաձեռնողներից: Սպանել են «Երիտասարդ Բոսնիա» ընդհատակյա կազմ-յան անդամները Սարաևոյում, որը պատճառ է դարձել ԱՀՊ-ի սկսման:

ՖՐԱՆՑԵՎԻՉ Իվան Նիկիտովիչ (1905–1985), ուկրաինացի մետաղագետ: Ուկր. ԽՍՀ ԳԱ ակադ. (1961): Սոց. աշխ. հերոս (1969): Աշխ-ները վերաբերում են փոշեմետաղագործությանը: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950):

ՖՐԱՆՑԻՍԿ I (François I, 1494–1547), Ֆրանսիայի թագավոր՝ 1515-ից՝ Վալուայի հարստությունից: Վարել է Ֆրանսիան բացարձակ միապետություն դարձնելու քաղ-յուն: Իտալիայի դեմ պատերազմներում (1494–1559) հաղթանակ է տարել (1515-ին) Մարինիանոյի մերձակայքում: Գերեվարվել է 1525-ին Պավիայի ճակատամարտում: Վերադառնալով գերությունից՝ 1527-ին վերսկսել է պատերազմ. գործողությունները:

ՖՐԱՆՑԻՍԿՈՍ (լատ.՝ Franciscus, ծ. 1936), Հռոմի 266-րդ պապը՝ 2013-ից: Ծնվել է Արգենտինայում: 1-ին պապը՝ Լատ. Ամերիկայից: Բուենոս Այրեսի արք. (1998), կարդինալ (2001): 2015-ի ապրիլի 12-ին Վատիկանի Սբ Պետրոս տաճարում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով մատուցել է պատարագ՝ նշելով, որ այդ ողբերգությունը XX դ-ի 1-ին ցեղասպանությունն է: 2015-ի փետր-ին Գրիգոր Նարեկացուն հռչակել է Տիեզ. եկեղեցու վարդապետ: 2016-ին (հունիսի 24–26) այցելել է Հայաստան. «...մի երկիր, որի ժողովուրդն առաջիններից էր, որ ստացավ Հիսուսի Ավետարանը»:

ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ԱՍԻԶԵՑԻ (լատ.՝ Franciscus Assisiensis, Ջովաննի Բեռնարդոնե, 1181/82–1226), իտալացի քարոզիչ: Ֆրանցիսկյան միաբանության հիմնադիրը, կրոն. բանաստեղծությունների հեղինակ («Առաքինության փառաբանություն», «Աստծու փառաբանություն» ևն): Ունեցել է բազմաթիվ հետևորդներ գրեթե բոլոր եվրոպ. երկրներում: Ֆ. Ա.-ի մասին պատմություններն ու լեգենդները շարադրված են «Սբ Ֆրանցիսկոս Ասիզեցու ծաղիկներ» ժող-ում: 1228-ին սրբադասվել է:

Հետևորդները՝ **Ֆրանցիսկյաններ**, 1207–09-ին Իտալիայում դոմինիկյանների հետ իրականացրել են *ինկվիզիցիայի* գործառույթները: Ֆ. ստեղծել են աստվածաբան. կրթության համակարգ՝ ձևավորել միջնադար. և Վերածնության դարաշրջանի մտածողների աստղաբույլ (Ռ. *Բեկոն, Բոնավենտուրա,* Յ. *Դունս Սկոտ* և ուր.): Զբաղվել են միսիոներությամբ: XVI–XVII դդ-ում նոր միաբանությունների (հատկապես՝ ճիզվիտների) առաջացումով Ֆ-ի ազդեցությունն զգալիորեն նվազել է:

ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՔՍԱՎԵՐՅԻ, Ֆրանսուս Քսավցի (Francuscus Xaverius, 1506–1552), կաթոլիկ միսիոներ, ճիզվիտների ուխտի հիմնադիրներից, Հռոմի կաթոլիկ և Անգլիկան եկեղեցու սուրբ: Քարոզել է Ասիայում, 1549–52-ին՝ Ճապոնիայում:

ՖՐԱՍԻԲՈԼՈՍ (Phrasibolos, մ. թ. ա. մոտ 450–389), Պելոպոնեսյան պատերազմի վերջին աթենացի զորավարը: Դեմոկրատ. խմբավորման առաջնորդ՝ մ. թ. ա. 411-ից: Ֆ-ի գլխավորությամբ 404-ին կործանվել է «երեսուն տիրանների» թագավորությունը և վերականգնվել դեմոկրատիան:

ՖՐԱՈՒՆՀՈՖԵՐ (Fraunhofer) Յոզեֆ (1787–1826), գերմանացի ֆիզիկոս: Օպտիկամեխ. ֆիրմայի հիմնադիրներից և տնօրենն, որը Եվրոպայի աստղադիտարաններին մատակարարում էր աստղագիտ. գործիքներ: Սկզբնավորել է աստղասպեկտրադիտումը, մանրամասնորեն նկարագրել (1814) Արեգակի սպեկտրի կլանման գծերը (Ֆ-ի գծեր), դիտարկել այլ տիեզ. մարմինների սպեկտրները:

ՖՐԱՈՒՆՀՈՖԵՐԻ ԳԾԵՐ, կլանման գծեր Արեգակի և այլ աստղերի սպեկտրներում: Աստղերի մթն-ի արտաքին շերտերում (նաև Երկրի մթն-ում) այդ աստղերի էլեկտրամագնիս. ճառագայթման կլանման և ցրման հետևանք են: Հայտնաբերել է Ու. Վոլաստոնը 1802-ին, Արեգակի սպեկտրում մանրամասն ուսումնասիրել է Յ. *Ֆրաունհոֆերը* 1814-ին:

ՖՐԱՈՒՆՀՈՖԵՐԻ ԴԻՖՐԱԿՑԻԱ, հարթ էլեկտրամագնիս. ալիքի դիֆրակցիան անհամասեռությունների, օր.՝ էկրանի ճեղքի վրա, որի b լայն-յունն զգալիորեն փոքր է Ֆրենելի գոտու չափից, այսինքն՝ $b \ll \sqrt{\lambda}$, որտեղ z-ը դիտարկման կետի հեռ-յունն է էկրանից, λ-ն՝ ալիքի երկ-յունը: Ճեղքի վրա լույսի զուգահեռ փնջի ընկնելուց հետո փունջը դառնում է տարամիտվող՝ $\varphi = \lambda/b$ տարամիտման անկյունով (դիֆրակցային տարամիտություն): Կոչվել է Յ. *Ֆրաունհոֆերի* անունով:

ՖՐԵԴԵՐԻԿ I (Frederik, 1471–1533), 1523-ից՝ Դանիայի, 1524-ից՝ Նորվեգիայի թագավոր՝ Օլդենբուրգների հարստությունից: 1524–25-ին ճնշել է գյուղացիների և ազնվականության ապստամբությունը, որոնք ցանկանում էին գահը վերադարձնել տապալված Քրիստիան II-ին: Ֆ. I-ի օրոք փաստացի կազմալուծվել է Կալմարյան ունիան:

ՖՐԵԴԵՐԻԿ II (1534–1588), Դանիայի և Նորվեգիայի թագավոր՝ 1559-ից՝ Օլդենբուրգների հարստությունից: Շվեդիայի դեմ Հս. յոթնամյա պատերազմի (1563–70) նախաձեռնողներից էր. ակտիվ մասնակցություն է ունեցել Լիվոնիայի բաժանմանը (*Լիվոնյան պատերազմ 1558–83*): Զգտել է ամրապնդել երկրի դիրքերը Բալթիկ ծովում:

ՖՐԵԴԵՐԻԿ III (1609–1670), Դանիայի և Նորվեգիայի թագավոր՝ 1648-ից՝ Օլդենբուրգների հարստությունից: *Քրիստիան IV*-ի որդին: Նրա օրոք Շվեդիայի դեմ պատերազմում (1657–58) Դանիան կորցրել է Սկոնեն և այլ տարածքներ: 1660-ին, հենվելով բյուրգերության և բանակի վրա, կատարել է պետ. հեղաշրջում, Դանիան հռչակվել է ժառանգ. միապետություն: 1665-ի օրենքով Դանիայում հաստատվել է բացարձակ միապետություն:

ՖՐԵԴԵՐԻԿ IV (1671–1730), Դանիայի և Նորվեգիայի թագավոր՝ 1699-ից՝ Օլդենբուրգների հարստությունից: Հս. պատերազմի (1700–21) ժամանակ՝ Պետրոս I-ի դաշնակիցը (1700, 1709–20-ին), որի արդյունքում Շլեզվիգն անցել է Դանիային. 1702-ին վերացրել է Զելանդիայի գյուղացիների ցկյանս ամրակցումն ապրելավայրին: Նպաստել է կրթության և մշակույթի զարգացմանը:

ՖՐԵԴԵՐԻԿ V (1723–1766), Դանիայի և Նորվեգիայի թագավոր՝ 1746-ից՝ Օլդենբուրգների հարստությունից: Պաշտպանել է առևտր. բուրժուազիայի շահերը, աջակցել գղտ-յան զարգացմանը, հիմնադրել է Արվ-ի թագավոր. ակադ-ը (1754):

ՖՐԵԴԵՐԻԿ VI (1768–1839), Դանիայի և Նորվեգիայի գահաժառանգ-խնամակալ՝ 1784–1808-ին, թագավոր՝ 1808–14-ին, Դանիայի թագավոր՝ 1814-ից Օլդենբուրգների հարստությունից: *Քրիստիան VII*-ի որդին: Դանիայում վերացրել է ճորտատիր. իրավունքը, Վեստ Ինդիայի գաղութներում՝ ստրկությունը: Ռուսաստանի հետ դաշնակցած՝ պատերազմել է Շվեդիայի դեմ (1788–90), աջակցել է Ֆրանսիայի՝ նապոլեոնյան արշավանք-

ներին: Պարտվելով Շվեդա–դանիական պատերազմում (1813–14)՝ կորցրել է Նորվեգիայի նկատմամբ իշխանությունը:

ՖՐԵԴԵՐԻԿ VII (1808–1863), Դանիայի թագավոր 1848–ից՝ Օլդենբուրգների հարստությունից: *Քրիստիան VIII*-ի որդին: Ճնշել է 1848-ի հեղ–յունը Շլեզվիգում և Հոլշտայնում, պարտվել է Պրուսիայի դեմ պատերազմում (1848–1950): 1849-ին, հարկադրված, հաստատել է սահմանադրությունը: Ժառանգներ չի ունեցել, որի հետևանքով Դանիայի թագը փոխանցվել է Օլդենբուրգների կրտսեր ճյուղին՝ Գլյուկսբուրգներին:

ՖՐԵԴԵՐԻԿ IX (1899–1972), Դանիայի թագավոր՝ 1947–72–ին՝ *Հաբսբուրգների* հարստությունից:

ՖՐԵԴԵՐԻԿՍ Վլադիմիր Բորիսովիչ (1838–1927), ռուս. պետ. գործիչ, հեծելազորի գեն. (1900), կոմս (1913): 1898–1917-ին և 1897–ից՝ արքունիքի և իշխան. կալվածքների նախարար, նախ–յան կառավարիչ: Նիկոլայ II-ի մերձավոր բարձրաստիճան պաշտոնյաներից: 1924–ից՝ վտարանդի:

ՖՐԵԴՐԻԿ I ՀԵՍՍԵՆՅԻ (Fredrik av Hessen, 1676–1751), Շվեդիայի թագավոր՝ 1720–ից: Մասնակցել է Իսպ. ժառանգության համար պատերազմին (1701–14), Նորվեգ. արշավանքներին (1716, 1718): 1718–20–ին՝ Շվեդիայի արքայազն–կոնսորտ (թագուհու ամուսին): Թագավոր ընտրվելուց հետո փաստացի իշխանությունից զրկվել է (երկիրը ղեկավարել է կանցլերը):

ՖՐԵԴՐԻԿՍՈՆ (Fredriksson) Գերտ Ֆրիդոլֆ (1919–2006), շվեդ մարզիկ (թիավարություն կանոեով): Օլիմպ. խաղերի 6–ակի (1948, 1952, 1956, 1960), աշխարհի բազմակի (1948, 1950, 1954) չեմպիոն:

ՖՐԵՋ Իլյա Աբրամովիչ (1909–1994), ռուս. կինոռեժ.: ԽՍՀՄ ժող. արտիստ (1989): Մանկ. կինոյի առաջատար վարպետներից («Առաջին դասարանցին», 1948, «Վասյոկ Տրուբաչևը և նրա ընկերները»,1955, «Տրուբաչևի ջոկատը մարտնչում է», 1957, «Կարանտին», 1983, ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1974):

ՖՐԵԶԵՐ, **Ֆրեյզեր** (Fraser), Դոն Լոռեյն (ծ. 1937), ավստրալիացի մարզուհի (լող, ազատ ոճ): Օլիմպ. խաղերի քառակի (1956, 1960, 1964), աշխարհի բազմակի (1956–64) չեմպիոն:

ՖՐԵԶՆՈ (Fresno), **Ֆրեսնո,** ք. ԱՄՆ–ի Կալիֆոռնիա նահց–ում: Բն.՝ 520,0 հզ. (արվարձաններով՝ շուրջ 1,1 մլն, 2015): Ֆ–ում է ծնվել ամերիկահայ գրող Վիլյամ *Սարոյանը,* 2017–ից գործում է գրողի տուն–թանգարանը:

ՖՐԵՅ ՄՈՆՏԱԼՎԱ (Frei Montalva) Էդուարդո (1911–1982), Չիլիի նախագահ՝ 1964–70–ին: Է. *Ֆրեյ Ռուիս Տագլեի* հայրը: 1957–ից՝ ՔԴԿ առաջնորդ: Պայքարել է Ս. *Ալիենդեի* կառ–յան դեմ: Պետ. հեղաշրջումից հետո (1973) եղել է վարչակարգին ընդդիմադիրների շարքում:

ՖՐԵՅ ՌՈՒԻՍ–ՏԱԳԼԵ (Frei Ruiz–Tagle) Էդուարդո (ծ. 1942), Չիլիի նախագահ՝ 1994–2000–ին: Է. *Ֆրեյ Մոնտալվայի* որդին: Չիլիի ՔԴԿ առաջնորդներից:

ՖՐԵՅԴ, **Ֆրոյդ** (Freud), Զիգմունդ (1856–1939), ավստրիացի հոգեբույժ, հոգեբան: Հոգեվերլուծության հիմնադիրը: Զարգացրել է անհատի հոգեսեքսուալ զարգացման տեսություն, բնավորության ձևավորման և վերջինիս ախտաբանության մեջ կարևորել է վաղ մանկության ապրումները: Յ. Բրեյերի (1842–1925) հետ մշակած «կատարսիստական» մեթոդից Ֆ. անցել է ազատ զուգորդությունների մեթոդին՝ համարելով այն հոգեվերլուծ. թերապիայի հիմք: Ֆ. հոգեվերլուծության սկզբունքները տարածել է մարդկային մշակույթի տարբեր ոլորտներում (դիցյուն, բանահյուսություն, կրոն ևն): Հեղինակ է «Երազների մեկնաբանություն» (1900), «Առօրյա կյանքի հոգեախտաբանություն» (1904), «Տոտեմ և տաբու» (1913), «Եսը և Այնը» (1923) և այլ աշխ–ների:

ՖՐԵՅԴԻԶՄ, **ֆրոյդիզմ**, **ֆրոյդականություն**, տարբեր դպրոցների ու հոսանքների համակցություն, որը ձգտում է Զ. *Ֆրեյդի* փիլ–մարդաբան. և հոգեբ. հայեցակարգերը կիրառել մշակույթի երևույթները բացատրելու համար: Ֆ. տարբեր է *հոգեվերլուծությունից*, որն անգիտակցական հոգեկան գործընթացների որոշակի մեթոդ է, որոնց սկզբունքներին Ֆ. վերագրել է համընդհ. նշանակություն: Հիմք ընդունելով Ֆրեյդի ուսմունքն անգիտակցականի մասին՝ Ֆ. մեծ նշանակություն է տվել առաջնային մղումների (սեռական մղում՝ Ֆրեյդի մոտ, ինքնահաստատման ձգտում՝ Ա. Ադլերի մոտ) ազդեցությանը մշակույթի զարգացման և սոցիալ. կյանքի երևույթների վրա: Տես նաև *Նեոֆրեյդիզմ*:

ՖՐԵՅՄԱՆԵ (Freimane, Պաստեռնակ, Pasternak) Լիդիա (1920–1992), լատիշ դերասանուհի: ԽՍՀՄ ժող. արտիստ (1970): 1947–ից՝ Ռպիտի անվ. լատվ. դրամատիկ. թատրոնի (1989–ից՝ Լատվիայի ազգ. թատրոն) դերասանուհի: ԽՍՀՄ Պետ. մրց. (1950, 1951):

ՖՐԵՅՆԴԼԻԽ, դերասաններ, հայր և դուստր. **Բրունո Արթուրովիչ Ֆ.** (1909–2002), ԽՍՀՄ ժող. արտիստ (1974): 1948–ից՝ Լենինգրադի Ա. Պուշկինի անվ. դրամատիկ. թատրոնի դերասան (Համլետ՝ Վ. Շեքսպիրի «Համլետ», Բալյասնիկով՝ Ա. Ն. Արբուզովի «Հին Արբատի հեքիաթները», ևն): Նկարահանվել է կինոյում («Դոն Կիխոտ», «Հայրեր և որդիներ», «Չայկովսկի» ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1951): **Ալիսա Ֆ.** (ծ. 1934), ԽՍՀՄ ժող. արտիստ (1981): 1961–ից՝ Լենինգրադի Լենսովետի անվ., 1983–ից՝ Մեծ դրամատիկ. թատրոնների դերասանուհի (Էլիզա Դուլիթլ՝ Բ. Շոուի «Պիգմալիոն», Լիկա՝ Ա. Ն. Արբուզովի «Իմ խեղճ Մարատ», լեդի Միլֆորդ՝ Ֆ. Շիլլերի «Խարդավանք և սեր», ևն): Նկարահանվել է կինոյում («Ծառայողական սիրավեպ», «Ստալկեր», «Դաժան ռոմանս», «Մերձմոսկովյան երեկոներ» ևն): ՌԽՖՍՀ (1976), ՌԴ (1995, 2000, 2007) Պետ. մրց–ներ:

ՖՐԵՅՆԴԼԻԽ (Freundlich) Հերբերդ (1880–1941), գերմանացի ֆիզքիմիկոս: 1938–ից՝ ԱՄՆ–ում: Աշխ–ները վերաբերում են կոլոիդ քիմիային: Ներմուծել է էլեկտրակինետիկ. պոտենցիալի մասին հասկացությունն ու «տիքսոտրոպիա» եզրույթը:

ՖՐԵՆԵԼ (Fresnel) Օգյուստեն Ժան (1788–1827), ֆրանսիացի ֆիզիկոս: Ալիք. օպտիկայի հիմնադիրներից: Ստեղծել է (1818) լույսի դիֆրակցիայի տեսությունը, որը հիմնված է *Հյուգենս–Ֆրենելի սկզբունքի* և ալիքների ինտերֆերենցիայի վրա: Ապացուցել է (1821) լույսի ալիքների լայնականությունը, բացատրել լույսի բևեռացումը (բյուրեղաօպտիկ. երևույթների 1–ին թեորեմը): Ստեղծել է իր անունով կոչված հայելիներ և ոսպնյակներ:

ՖՐԵՆԵԼԻ ԴԻՖՐԱԿՑԻԱ, գնդաձև էլեկտրամագնիս. ալիքների դիֆրակցիան անհամասեռությունների, օր.՝ էկրանի ճեղքի վրա, որի b չափը համեմատական է Ֆրենելի գոտու չափի հետ՝ $b \sim \sqrt{z\lambda}$, որտեղ z–ը դիտման կետի հեռ–յունն է հայելուց, λ–ն՝ ալիքի երկ–յունը: Կոչվել է Օ. *Ֆրենելի* անունով:

ՖՐԵՆԵԼԻ ՀԱՅԵԼԻՆԵՐ, միմյանց նկատմամբ փոքր անկյան տակ (մոտավորապես մի քանի անկյուն. *n*) տեղակայված 2 հարթ հայելիներից բաղկացած (Ֆրենելի երկհայելի) օպտիկ. սարք: Օգտագործվում է լույսի ինտերֆերենցիան դիտարկելու համար: Առաջարկել է Օ. *Ֆրենելը* 1816–ին:

ՖՐԵՆԿԵԼ Յակով Իլյիչ (1894–1952), ռուս. ֆիզիկոս տեսաբան: Աշակել է ֆեռոմագնիսների 1–ին քվանտ. տեսությունը (1928, անկախ՝ Վ. *Հայզենբերգից*) և նրանց դոմեն. կառուցվածքը (1930, Յ. Գ. Դորֆմանի հետ): Առաջարկել է հեղուկների կինետիկ. տեսությունը, ներմուծել «էքսիտոնի և բյուրեղների արատներ» հասկացությունները: Աշխ–ները վերաբերում են նաև էլեկտրահաղորդականության քվանտ. տեսությանը, միջուկ. ֆիզիկային, աստղաֆիզիկային, կենսաֆիզիկային:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1947):

ՖՐԵՆԿԵԼ Յան Աբրամովիչ (1920–1989), ռուս. կոմպոզիտոր: ԽՍՀՄ ժող. արտիստ (1989): Հեղինակ է հանրաճանաչ երգերի («Կարմիր բոինչ», «Ռուսական դաշտ», «Կոռնկներ», «Քեզ համար» ևն), կինոերաժշտության («Կանայք», 1966, «Անորսալիների նոր արկածները», 1968, ևն): ԽՍՀՄ Պետ. մրց. (1982):

ՖՐԵՆԿՅԱՆ Արամ (1894–1964), փիլ.: Փիլ. գիտ. դ–ր (1931), Բուխարեստի համալսարանի հուն–ի, հուն. գրկ–յան և փիլ–յան պրոֆ. (1945): Աշխ–ները վերաբերում են Պլատոնի, Արիստոտելի, Զ. Ֆրեյդի, Ա. Բերգսոնի, եգիպտ., հնդկ. և Մերձ. Արևելքի փիլ–յանը:

ՖՐԵՆՈԼՈԳԻԱ (< հուն. phren – հոգի, խելք և *...լոգիա*), **զանգազուշակություն**, հայեցակարգ, որի համաձայն՝ գանգաչափ. տվյալների հիման վրա հնարավոր է դատել մարդու հոգեկան առանձնահատկությունների մասին: Հիմնադիր՝ ավստրիացի բժիշկ Ֆ. Յ. Գալլ (1758–1826):

ՖՐԵՆՉ (French) Ջոն Դենթոն Փինքսթոն (1852–1925), բրիտանացի ռազմ. գործիչ, Իփրեցի կոմս (1922), ֆլդմ. (1913): ԱՀՊ–ի ժամանակ Ֆրանսիայում եղել է բրիտ. ռազմարշավ. զորքերի հրամ. (1915), 1918–21–ին՝ Իռլանդիայի լորդ–լեյտ. (փոխարքա):

ՖՐԵՆՍԻՍ (Գազանջյան) Առլեն Սարգսի (1908–2001), դերասանուհի: 1937–ից աշխատել է ռադիոյում, թատրոնում (գլխ. դերերով հանդես է եկել «Մորաքույր Ձենի», «Դանտոնի մահը», «Չին–Չին» և այլ ներկայացումներում): Նկարահանվել է կինոյում («Ֆեդորա», «Մեկ, երկու, երեք» ևն): Խմբագրել է Էն Բի Սի ընկ–յան «Հոմ» հեռուստահանդեսը: Հեղինակ է «Այդ որոշակի անորոշությունը» և այլ գրքերի: ԱՄՆ կենսագր. ինստ–ի «Տարվա կին» (1973):

ՖՐԵՆՍԻՍ (Francis) Ջեյմս (1815–1892), անգլիացի հիդրոտեխնիկ: 1847–ին ստեղծել է աշխ. անվին ջրի արտաքին մատուցմամբ տուրբին: Ժամանակակից շառավղաառանցք. տուրբիններն հաճախ անվանում են Ֆ–ի տուրբին:

ՖՐԵՈՆՆԵՐ (ֆրանս.՝ Freons, լատ.՝ frigus – ցուրտ, սառնամանիք), հալոգենն պարունա–

կող ալիֆատիկ հագեցած ածխաջրածինների տեխ. անվանումը: **Սառնագդանակներ** են՝ գազեր (օր.՝ CCl_2F_2, $t_{հալ.}$՝ 29,8 °C) կամ ցնդող հեղուկներ (օր.՝ CCl_3F, $t_{հալ.}$՝ 23,7°C): Թունավոր չեն, օդի հետ պայթյունավտանգ խառնուրդներ չեն առաջացնում, մետաղների մեծամասնության հետ չեն ռեակցում: Օգտագործվում են որպես պրոպելենտներ, լուծիչներ ևն: Քայքայող ազդեցություն ունեն մթն-ի օզոն. շերտի վրա, որի պատճառով դրանց՝ որպես սառնագդանակների, արտադր-յունը կրճատվել է:

ՖՐԵՄԿՈԲԱԼԴԻ (Frescobaldi) Ջիրոլամո (1583–1643), իտալացի կոմպոզիտոր, երգեհոնահար: Ստեղծել է երգեհոն. արվ-ի նշանակալի երկեր (ռիչերկարներ, կանցոններ, տոկատաներ, ֆանտազիաներ, կապրիչչոներ), նպաստել ***ֆուգայի*** ձևավորմանը: Հեղինակ է նաև մեսսաների, մազնիֆիկատների, մադրիգալների և այլ գործերի:

ՖՐԵՐ, XIII դ–ի ճարտ.: Շին. արձանագրության մեջ (անվանվում է «վարպետ Ֆրեր Կարնո քաղաքացի») նշված է, որ 1277–ին կառուցել է Հոռոմոսի վանքի նշխարատունը:

ՖՐԵՐ–ՕՐԲԱՆ (Frère–Orban) Յուբեր Ժոզեֆ Վալտեր (1812–1896), Բելգիայի վարչապետ և, միաժամանակ, ԱԳ նախարար՝ 1868–70 և 1878–84–ին: Ազատ. կուս-յան առաջնորդ:

ՖՐԻԴԵԼ (Friedel) Շառլ (1832–1899), ֆրանսիացի քիմիկոս-օրգանիկ, հանքաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1894): Աշխ-ները վերաբերում են օրգ. և սիլիցիումօրգ. միացությունների սինթեզին, արհեստ. միներալների ստացմանը, հրաէլեկտրականությանը: Առաջարկել է (1877–ին, Ջ. ***Քրաֆթսի*** հետ) արոմատիկ միացությունների ալկիլման ևացիլման եղանակները (Ֆրիդել–Քրաֆթսի ռեակցիա):

ՖՐԻԴԼՅԱՆԴԵՐ Իոսիֆ Նաումովիչ (1913–2009), ռուս. մետաղագետ: ՌԳԱ ակադ. (1984): Աշխ-ները վերաբերում են թեթև համաձուլվածքներին, կոմպոզիցիոն նյութերին: ԽՍՀՄ (1949), ՌԴ (1999) Պետ., Լենինյան (1963) մրց-ներ:

ՖՐԻԴՄԱՆ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (1888–1925), ռուս. մաթեմատիկոս և երկրաֆիզիկոս: 1922–24–ին գտել է Էյնշտեյնի ձգողության հավասարումների ոչ ստացիոնար լուծումները, որոնք դրվել են անկայուն (ընդարձակվող) Տիեզերքի տեսության հիմքում: Տուրբուլենտության ժամանակակից տեսության և դինամիկ. օդերևութաբանության ռուս. դպրոցի հիմնադիրներից:

Լենինյան մրց. (1931, հետմահու):

ՖՐԻԴՄԱՆ (Friedman) Ջերոմ Այզեկ (ծ. 1930), ամերիկացի ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են տարր. մասնիկների ֆիզիկային և դաշտի տեսությանը: Կատարել է տարր. մասնիկների քվարկային կառուցվածքի հիմնարար ուսումնասիրություններ: Նոբելյան մրց. (1990, Հ. ***Քենդալի*** և Ռ. ***Թեյլորի*** հետ):

ՖՐԻԴՄԵՆ, Ֆրիդման, Միլտոն (1912–2006), ամերիկացի տնտեսագետ, քաղտնտ-յան մեջ մոնետարիզմի գաղափարախոս: Աշխ-ները վերաբերում են դրամաշրջանառության տեսությանն ու պրակտիկային: Ազգ. եկամտի մոնետար տեսության ու փողի քանակ. տեսության նոր տարբերակի հեղինակն է: Նոբելյան մրց. (1976):

ՖՐԻԴՐԻԽ (Friedrich) Վալտեր (1915–1988), գերմանացի աստղագետ: Աշխ-ները վերաբերում են հիմնարար աստղացույցների ստեղծմանը և աստղագիտ. մեծությունների արժեքների ճշգրտմանը:

ՖՐԻԴՐԻԽ I Շիկամորուս (Friedrich I Barbarossa, մոտ 1125–1190), Գերմանիայի թագավոր՝ 1152–ից: Հռոմ. սրբազան կայսրության կայսր՝ 1155–ից՝ Շտաուֆենների հարստությունից: Փորձել է հպատակեցնել Հս. Իտալիայի քաղաքները, սակայն Լենյանոյի ճակատամարտում (1176) պարտվել է Լոմբարդական լիգայի զորքերին: Խաչակրաց III արշավանքի ժամանակ խեղդվել է Սելևկիա գետում (Կիլիկիա):

ՖՐԻԴՐԻԽ II (1712–1786), Պրուսիայի թագավոր՝ 1740–ից: Հոհենցոլեռնների հարստությունից, զորավար: ***Ֆրիդրիխ Վիլհելմ I***-ի որդին: Նրա նվաճող. քաղյան [Սիլեզյան պատերազմներ 1740–42 և 1744–45, մասնակցել է Յոթնամյա պատերազմին (1756–63), Լեհաստանի 1722–ի 1–ին բաժանմանը] հետևանքով Պրուսիայի տարածքները գրեթե կրկնապատկվել են: Վերացրել է ֆիզ. տանջանքները, պարզեցրել դատավարության ընթացքը, վարել կրոն. հանդուրժողականության քաղ-յուն: Ֆ II–ի ռազմ. համակարգը պահպանվել է մինչև XIX դ–ի սկիզբը և ընդօրինակվել Արմ. Եվրոպայի երկրներում ու Ռուսաստանում:

ՖՐԻԴՐԻԽ II Շտաուֆեն (Friedrich II Staufen, 1194–1250), Գերմանիայի թագավոր՝ 1212–ից, Հռոմ. սրբազան կայսրության կայսր՝ 1220–ից, Սիցիլիայի թագավոր՝ 1197–ից: Սիցիլիայի թագավորությունը դարձրել է կենտրոնացված պետություն:

ՖՐԻԴՐԻԽ III Հաբսբուրգ (Friedrich III Habsburg, 1415–1493), Գերմանիայի թագավոր (1440–ից), Հռոմ. սրբազան կայսրության կայսր՝ 1452–ից (Հռոմում թագադրված վերջին կայսրը): 1448–ին Նիկողայոս V պապի հետ կնքել է Վիեննայի համաձայնագիրը, որով մինչև 1806–ը սահմանվել է կաթոլիկ եկեղեցու կարգավիճակը Հռոմ. սրբազան կայսրության տարածքում: 1440–52–ին՝ որպես Լավր Պոստամի խնամակալ, կառավարել է Բոհեմիան և Հունգարիան (մինչև 1446–ը): 1463–ից հետո միավորել է Ավստրիայի Հաբսբուրգների ժառանգ. բոլոր տարածքները: 1480–ական թթ–ին Հունգարիայի Մ. Հունյադի թագավորի դեմ պայքարում կորցրել է ավստր. բոլոր տարածքները:

ՖՐԻԴՐԻԽ III Հոհենցոլեռն (Friedrich III Hohenzollern, 1831–1888), Պրուսիայի թագավոր և Գերմանիայի կայսր՝ 1888–ից: ***Վիլհելմ I***-ի որդին, ***Վիկտորյա*** թագուհու փեսան: 1861–ից՝ թագաժառանգ:

ՖՐԻԴՐԻԽ ՎԻԼՀԵԼՄ (Friedrich Wilhelm, 1620–1688), Բրանդենբուրգի կուրֆյուրստ՝ 1640–ից, «մեծ կուրֆյուրստ» Հոհենցոլեռնների հարստությունից: Նրա օրոք վերջնականապես Բրանդենբուրգին են միացել Պրուսիայի հերցոգությունը (մինչև այդ՝ Լեհաստանի լեն) և այլ տարածքներ: Սահմանել է Պրուսիայի բացարձակ միապետության հիմունքները:

ՖՐԻԴՐԻԽ ՎԻԼՀԵԼՄ I (1688–1740), Պրուսիայի թագավոր՝ 1713–ից՝ Հոհենցոլեռննների հարստությունից: ***Ֆրիդրիխ II***-ի հայրը: Ստացել է «Ֆելդֆերելը գահին» մականունը: Դրել է պրուս. ռազմամոլության հիմքերը. մարմնավորել է պրուսականության (շովինիզմ, կոպիտ ուժի պաշտամունք, ատելություն մշակույթի և առաջադիմության նկատմամբ) հիմն. գծերը:

ՖՐԻԴՐԻԽ ՎԻԼՀԵԼՄ II (1744–1797), Պրուսիայի թագավոր՝ 1786–ից՝ Հոհենցոլեռնների հարստությունից: 1792–ին ռազմ. դաշինք է կնքել Ավստրիայի հետ՝ ընդդեմ հեղ. Ֆրանսիայի:

ՖՐԻԴՐԻԽ ՎԻԼՀԵԼՄ III (1770–1840), Պրուսիայի թագավոր՝ 1797–ից՝ Հոհենցոլեռնների հարստությունից: ***Տիլզիտի հաշտության*** (1807) պայմանագրով Նապոլեոն I–ին է զիջել Պրուսիայի տարածքի կեսը:

ՖՐԻԴՐԻԽ ՎԻԼՀԵԼՄ IV (1795–1861), Պրուսիայի թագավոր՝ 1840–ից՝ Հոհենցոլեռնների հարստությունից: Ճնշել է 1848–1849–ի հեղ-յունը, մասնակցել Պրուսիայում դաժան ռեակցիայի հաստատմանը, բայց, այնուամենայնիվ, հարկադրված ընդունել է սահմանադրությունը: 1857–ից հեռացել է պետության կառավարումից՝ հոգեկան խանգարման պատճառով:

ՖՐԻՋԵՐԵՆ, ***ֆրիզների*** լեզուն: Պատկանում է հնդեվրոպ. լեզվաընտանիքի գերմ. լեզուների արմ. խմբին: Գրավոր հնագույն հուշարձաններն ավանդվել են XIII դ–ից: Փոխարինվել է հոլ-ով:

ՖՐԻԶԻՆԳԵՐ–ՊՈՍՏՄԱ (Frisinger–Postma) Աննա Քրիստինա (ծ. 1977), գերմանացի մարզուհի (արագընթաց չմշկավազք): Ձմեռ. օլիմպ խաղերի եռակի (2002, 2006, 2010), աշխարհի 16–ակի (1998–2009) չեմպիոն՝ տարբեր հեռ-յուններում, այդ թվում՝ աշխարհի եռակի (2001–02, 2005), Եվրոպայի հնգակի (2000, 2002–05) բացարձակ չեմպիոն:

ՖՐԻԶՅԱՆ ԿԶԶԻՆԵՐ, Հս. ծովում՝ Նիդեռլանդների, Գերմանիայի և Դանիայի կազմում: Ափի երկ-յամբ ձգվում են շուրջ 250 *կմ*: Տարածքը՝ շուրջ 480 *կմ*²: Կան ծով. առողջարաններ:

ՖՐԻԶԵՐ, ժողտ Նիդեռլանդներում (470 հզ., 2010) և Գերմանիայում (15 հզ.): Լեզուն՝ ***ֆրիզերեն***: Հավատացյալները կալվինական և կաթոլիկ են:

ՖՐԻԹԱՈՒՆ (Freetown), Սիեռա Լեոնեի մայրաքաղաքը (1961–ից) և Արմ. պրովինցիայի վարչ. կենտրոնը, նվինգատ Ատլանտ. օվկ-ի ափին: Բս.՝ շուրջ 836 հզ. (2010): Ունի օդանավակայան: Հիմնադրել են անգլիացիները 1787–ին:

ՖՐԻԿ (մոտ 1230–ական թթ.–մոտ 1310–ական թթ.), բանաստեղծ: Ստեղծել է սոցիալ. սուր բովանդակությամբ բանքեր: Հիմնականում անդրադարձել է ազգ. և սոցիալ. խնդիրներին: Հեղինակ է անարդար ճակատագրի դեմ ընդվզող «Ընդդէմ ֆալաքին...», Աստծու հետ բանավիճող, դժգոհող «Բան ի Ֆրիկ գրքոյն» («Գանգատ»), «Վասն Արղուն–Ղանին եւ Բուղային», «Վասն դալեհի եւ բրջի» բանքերի, աշխարհի ունայնության, կրոնաբարոյախոս., հոգու և մարմնի հակամարտության թեմաներով բանաստեղծությունների («Դեղեցիկ պատկերք ու հեր», «Մինչ ածէ զմահն ու մօտ է եւ անողորմ գրրօղն գայ», «Սիրտ իմ, ընդէ՞ր ես խռովել», «Է, անօրէն եւ անառակ» ևն): Ֆ–ի բանաստեղծությունների մեծ մասը հայտնաբերել և հրտ-յան է պատրաստել Տիրայր Վարդապետը: Լույս են տեսել «Բանաստեղծություններ» (1941), «Դիւան» (1952), «Տաղեր» (1982) ժող-ներ:

ՖՐԻՇ (Frisch) Կառլ Ֆոն (1886–1982), գերմանացի ֆիզիոլոգ, էթոլոգ: Ուսումնասիրել է ձկների և միջատների զգացողության օրգանները, կենդանիների բնազդ. վարքը: Վերծանել է մեղուների՝ տեղեկույթի հաղորդման մեխանիզմնե-

րը («մեղուների պարը»): Նոբելյան մրց. (1973, Կ. *Լորենցի* և Ն. *Տինբերգենի* հետ):

ՖՐԻՇ Մաքս (1911–1991), շվեյցարացի գերմանագիր գրող: Հեղինակ է «Շտիլլեր» (1954), «Homo faber» (1957, հայ.՝ 1970), «Իմ անունը Գանտենբայն է» (1964), «Մարդը հայտնվում է հոլոցենի դարաշրջանում» (1979), «Կապույտ մորուք» (1982) և այլ վեպերի, «Շվեյցարիան առանց բանակի՞» (1989) վիպակի, «Կոմս Յոդեղանդը» (1951), «Անդորրա» (1961) և այլ պիեսների, նաև գր. օրագրերի (1947–71):

ՖՐԻՇ Ռագներ Անտոն Կիտիլ (1895–1973), նորվեգացի տնտեսագետ: Աշխ-ները վերաբերում են էկոնոմետրիայի, տնտ-մաթ. վերլուծության մեթոդաբանության, տնտ. շրջափուլի և ածի մոդելավորման խնդիրներին: Մշակել է ազգ. հաշիվների համակարգի կառուցման սկզբունքները: Նոբելյան մրց. (1969, Յ. *Թինբերգենի* հետ):

ՖՐԻՇ (Frish) Օտտո Ռոբերտ (1904–1979), անգլիացի ֆիզիկոս: Աշխ-ները վերաբերում են միջուկ. ֆիզիկային և մոլ. փնջերին: 1939-ին մեկնաբանել է Օ. *Գանի* փորձերը՝ որպես ուրանի միջուկի տրոհման երևույթ: Նեյտրոնների ազդեցությամբ և փորձով ստուգել է այդ երևույթը՝ ապացուցելով ուրանի միջուկի բարձրէներգետիկ բեկորների գոյությունը:

ՖՐԻՉ (Frić) Սարտին (1902–1968), չեխ կինոռեժ.: ՉՍՍՀ ժող. արտիստ (1965): Չեխ. կինոարվ-ի հիմնադիրներից: Նկարահանել է «Յանոշիկ» (1936), «Կոփվածները» (1950), «Կայսրի հացթուխը» (1951), «Արյան գաղտնիքը» (1953), «Ֆուրգոնի մարդիկ» (1966) և այլ ֆիլմեր: ՉՍՍՀ Պետ. մրց. (1950, 1951):

ՖՐԻՍՏԱՅԼ (անգլ.՝ free styl – բառացի՝ ազատ ոճ), *լեռնադահուկային սպորտի* և սնոուբորդինգի տեսակ: Գոյություն ունեն Ֆ-ի տարբեր տարածություններ. մոդուլ՝ լեռնադահուկներով արագընթաց վայրէջք բլրավոր տեղանքի սահուղով, դահուկաբալետ՝ վայրէջք թեք սահուղով՝ տարբեր ֆիգուրների (քայլեր, պտույտներ, շրջադարձեր) կատարումով, դահուկացատկեր 2 մ-անոց հարթակից՝ մի շարք ակրոբատիկ մարզավարժությունների (սալտո, պիրուետներ, շրջադարձեր ևն) կատարումով: Ձմեռ. օլիմպ. խաղերի ծրագրում՝ 1992-ից, աշխարհի գավաթը՝ 1978-ից, առաջնությունը՝ 1986-ից:

ՖՐԻՑՇԵ (Fritzsche) Յուլի Ֆեոդորովիչ (Կառլ Յուլիուս, 1808–1871), ռուս. քիմիկոս և բուսաբան (ծագումով՝ գերմանացի): Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1852): 1834-ից՝ Ռուսաստանում: Բացահայտել է *անտրացենը* (1867), երկնիտրոբինոնը (1868), որը հայտնի է որպես Ֆ-ի «ռեագենտ» ածխաջրածինների համար:

ՖՐՅՈԲԵԼՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ [գերմանացի մանկավարժ Ֆ. *Ֆրյոբելի* (1782–1852) անունով, Ռուսաստանում 1872–1917-ին վճարովի մանկավարժ. ուս. հաստատություններ՝ նախադպրոց. տարիքի երեխաների դաստիարակչություններ (տնային կամ մանկապարտեզում) պատրաստելու համար: Ուս. տևողությունը՝ 3 տարի: Առաջին Ֆ. դ. բացվել են Ս. Պետերբուրգում (1917-ից՝ նախադպրոց. կրթության ինստ.), ապա՝ Խարկովում, Թիֆլիսում, Օդեսայում և այլ ք-ներում: Հայ իրականության մեջ առաջին Ֆ. դ. հիմնադրել են Գայանե *Հովհաննիսյանը* (1882-ին) և Սոֆյա *Արղության-Երկայնաբազուկը* (1907-ին) Թիֆլիսում:

ՖՐՈԼՈՎ Իվան Տիմոֆեևիչ (1929–1999), ռուս. քաղ. գործիչ, փիլ.: ՌԳԱ ակադ. (1987): 1989–91-ին՝ «*Պրավդա*» թերթի գլխ. խմբ.: Հեղինակ է գիտակցության տեսությանը, մարդու ինդիրներին, գիտության և տեխնիկայի զարգացմանը, սոցիալ-փիլ. հարցերին վերաբերող աշխ-ների:

ՖՐՈԼՈՎ Կոնստանտին Վասիլևիչ (1932–2007), մեքենաշինության ընագավառի ռուս. գիտնական: ՌԳԱ ակադ. (1984), փոխնախագահ (1985–96): Սոց. աշխ. հերոս (1990): Աշխ-ները վերաբերում են մեքենաների դինամիկային և թրթռումներին, մարդ-կարգավար համակարգի կենսամեխանիկայի հարցերին՝ մեքենաների թրթռային ազդեցության պայմաններում: ԽՍՀՄ Պետ. (1986), Լենինյան (1988) մրց-ներ:

ՖՐՈԼՈՎ Վալերիան Ալեքսանդրովիչ (1895–1961), ռուս. ռազմ. գործիչ: Գեն-գնդ. (1943): Բանակների հրամ.՝ Խորհրդաֆինն. պատերազմում և ՀՄՊ-ի ժամանակ (Կարել. ռազմաճակատում), 1945–56-ին՝ Բելոմորսկի և Արխանգելսկի ՋՈՒ զորքերի հրամ.:

ՖՐՈՄ (Fromm) Էրիխ (1900–1980), գերմանացի փիլ., հոգեբան, սոցիոլոգ: Նեոֆրեյդիզմի գլխ. ներկայացուցիչներից: 1933-ից՝ ԱՄՆ-ում: Հիմնվելով *հոգևերլուծության*, *էկզիստենցիալիզմի* և *մարքսիզմի* գաղափարների վրա՝ ձգտել է բացահայտել մարդկային գոյության հիմն. հակասությունները էգոիզմի և ալտրուիզմի, ունենալու և լինելու միջև: Ժամանակակից քաղաքակրթության ճգնաժամի հաղթահարման ուղիները տեսել է «առողջ հասարակության» ձևավորման մեջ: Հեղինակ է «Փախուստ ազատությունից» (1941), «Հոգեվերլուծությունը և կրոնը» (1950), «Հույսի հեղափոխությունը» (1968) և այլ աշխ-ների:

ՖՐՈՍԹ (Frost) Ռոբերտ Լի (1875–1963), ամերիկացի բանաստեղծ: Հեղինակ է «Բոստոնից հյուսիս» (1915), «Նյու Հեմփշիր» (1923), «Հեռավոր լեռնաշղթա» (1936) և ռեալիստ. երկերի այլ ժող-ների: Պուլիցերյան մրց. (1924, 1931, 1937, 1943):

ՖՐՈՒՄԿԻՆ Ալեքսանդր Նաումովիչ (1895–1976), ռուս. քիմիկոս, էլեկտրաքիմ. գիտ. դպրոցի հիմնադիրը: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1932): Սոց. աշխ. հերոս (1965): Աշխ-ները վերաբերում են էլեկտրաքիմ. շարժընթացների կինետիկայի և մեխանիզմի հարցերին, առաջարկել է մետաղլուծույթ սահմանին կրկնակի էլ. շերտի կառուցվածքի մասին պատկերացումը:

Լենինի անվ. (1931), ԽՍՀՄ Պետ. (1941, 1949, 1952) մրց-ներ:

ՖՐՈՒՆԶԵ Միխայիլ Վասիլևիչ (1885–1925), խորհրդ. ռազմ. և քաղ. գործիչ: 1917–22-ի քաղաքաց. պատերազմում Կարմիր բանակի ամենախոշոր զորապետներից ու ռազմ. տեսաբան: Ղեկավարել է Արլ. ճակատի զորքերի հվ. խմբավորումը, Արլ. և Թուրքեստանյան ճակատները: 1924–25-ին՝ ԽՍՀՄ ՌՀԿ նախագահ, միաժամանակ ԲԳԿԲ-ի շտաբի և ռազմական ակադ-ի պետ: Ֆ-ի գլխավորությամբ 1924–25-ին երկրում իրականացվել է ռազմ. բարեփոխում: Գիտ. աշխ-ները վերաբերում են ռազմ. գիտ-յանը, զբաղվել է խորհրդ. ռազմ. հայեցակարգի մշակմամբ:

«ՖՐՈՒ–ՖՐՈՒ», ազգ., գր., երգիծ. շաբաթաթերթ (1908–09, Կ. Պոլիս): Տնօրեն-խմբ.՝ Վահան Փափազյան (Լիլա):

ՖՈՒԲՐՈՄԵԳԱՆ, դեղանյութ. ունի լավ արտահայտված ծայրամաս. խոլինալուծիչ հատկություն: Ազդում է հարթ մկանների վրա: Սինթեզվել է ՆՕՔԻ-ում: Բժշկության մեջ ներդրվել է 1967-ին:

ՖՈՒԳԱ (իտալ.՝ fuga – վազք), բարդ իմիտացիոն պոլիֆոնիկ երաժշտ. ձև՝ հիմնված բոլոր ձայներում մեկ կամ մի քանի թեմաների բազմակի անցկացումների վրա: Տարբերում են Ֆ-ի պարզ (1 թեմայով) և բարդ՝ 2 (կրկնակի) կամ 3 (եռակի) թեմաներով, տեսակներ: Զարգացմանը նպաստել են Յ. Ս. Բախը, Գ. Ֆ. Հենդելը, Պ. Հինդեմիթը, Դ. Դ. Շոստակովիչը և ուր.: Ֆ-ին անդրադարձել են նաև Ա. Սպենդիարյանը, Ա. Խաչատրյանը, Ք. Քուշնարյանը, Ա. Բարաբաջանյանը, Ա. Հարությունյանը, Է. Միրզոյանը, Գ. Հախինյանը, Գ. Չերոտարյանը և ուր.:

ՖՈՒԳԱՍ (ֆրանս.՝ fougasse, < լատ. focus – կրակ), պայթուցիկ լիցք, որը պայթեցնում են հողի մեջ, որևէ օբյեկտում կամ ջրի տակ: Պատկանում է արկապայթուցիկ միջոցներին, օգտագործում են ռազմ. արգելափակոցների շին-յան ժամանակ: 1970-ական թթ-ից «Ֆ.» եզրույթի փոխարեն հաճախ օգտագործում են «պայթուցիկ նյութի լիցք», «օբյեկտի արկ» և այլ եզրույթներ:

ՖՈՒԵՆՏԵՍ (Fuentes) Կառլոս (1928–2012), մեքսիկացի գրող: Հեղինակ է «Անամպ պարզության երկիրը» (1958), «Արտեմիո Կրուսի մահը» (1962, հայ.՝ 1979), «Հիդրայի գլուխը» (1978), «Հեռավոր ընտանիք» (1980), «Ծեր գրինգոն» (1985), «Չծնված Քրիստոփորը» (1987) վեպերի, «Terra nostra» (1975) վեպ-էպոպեայի, նաև պատմվածքների, էսսեների, նովելների: Հայ. հրատարակվել է «Աուրա» (2016) վիպակը: Մեքսիկայի ազգ. գր. մրց. (1984):

ՖՈՒԶԱՐԻՈԶՆԵՐ, բույսերի հիվանդություններ, հարուցիչները *ֆուզարիում* ցեղի անկատար սնկերն են: Ախտահարում են բույսի անոթ. համակարգը և հյուսվածքները: Վնասում են կարտոֆիլը, կտավատը, բակլազգիները, դդմազգիները:

ՖՈՒԶԱՐԻՈՒՄ (Fusarium), անկատար սնկերի ցեղ: Հայտնի է 70 տեսակ՝ ամենուր, ՀՀ-ում՝ 45՝ բոլոր մարզերում: Սապրոֆիտներ և մակաբույծներ են (առաջացնում են *ֆուզարիոզներ*): Ֆ-ի թույներ պարունակող հացահատիկն օգտագործելիս առաջանում է մարդկանց սննդաթուն. ալեյկիա, կենդանիների՝ ֆուզարիոտոքսիկոզ: Տեսակներից մեկն առաջացնում է *գիբերելիներ*:

ՖՈՒԺԵՐՈՆ (Fougeron) Անդրե (1913–1998), ֆրանսիացի գեղանկարիչ, գրաֆիկ: Ֆրանսիայում «նոր ռեալիզմ» շարժման հիմնադիր («Փարիզեցի կանայք շուկայում», 1948, ևն):

ՖՈՒԼԲԵ, **ֆուլա, աֆուլի, ֆուլանի, պյոլ,** ժողղ Նիգերիայում (3,5 մլն, 2010), Մեսագալում (2,2 մլն), Կամերունում (1,8 մլն), Բուրկինա Ֆասոյում (1,2 մլն), Մալիում (1,1 մլն), Կոտ դ'Իվուարում (500 հզ.): Լեզուն՝ ֆուլա: Հավատացյալները հիմնականում սուննի մահմեդական են:

ՖՈՒԼԼԵՐ Ջոն Ֆրեդերիկ Չառլզ (1878–1966), անգլիացի ռազմ. պատմաբան և տեսաբան: Գեն-մայոր (1930): Հեղինակ է «Փոքր պատերազմների» տեսության, ըստ որի՝ պատերազմում հաղթել կարելի է ոչ բազմաքանակ, բայց տեխնիկապես բարձր հանդերձված բանակով:

ՖՈՒԼՏՈՆ (Fulton) Ռոբերտ (1765–1815), ամերիկացի գյուտարար: Կառուցել է

(1807) աշխարհում առաջին շոգենավը՝ «Կլերմոնտ»-ը:

ՖՈՒԿՈ (Foucault) Ժան Բեռնար Լեոն (1819–1868), ֆրանսիացի ֆիզիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. թղթ. անդամ (1860): Որոշել է (1850) լույսի արագությունը օդում և ջրում՝ մի մեթոդով, որը հետագայում կոչվել է նրա անունով: Պատրաստել է իր անունով հայտնի ***Ֆուկոյի ճոճանակը***: Հայտնաբերել է էլ. ***մրրկային հոսանքներ*** (Ֆուկոյի հոսանքներ): Ստեղծել է ***գիրոսկոպը***:

ՖՈՒԿՈՅԻ ՃՈՃԱՆԱԿ, կախոցի վրա ամրացրած զանգվածեղ բեռ, այնպես, որ ճոճանակը կարողանա տատանվել ցանկացած ուղղաձիգ հարթության մեջ: Ֆ. ճ-ի տատանման հարթությունը պահպանում է իր անփոփոխ դիրքն աստղերի նկատմամբ, սակայն պտտվող Երկրի մակերևույթի նկատմամբ այն դանդաղորեն շրջվում է դեպի Երկրի պտույտի հակառակ ուղղությունը, ցուցադրում Երկրի առանցք. պտույտի փաստը: Ժ. ***Ֆուկոն*** Երկրի պտույտն ապացուցող առաջին փորձը կատարել է Փարիզի Պանթեոնի 67-*մ*-անոց ճոճանակի միջոցով:

ՖՈՒԿՈՒԻ Կենյիտի (1918–1998), ճապոնացի ֆիզքիմիկոս: Առաջարկել (1952) և զարգացրել է սահման. մոլ. օրբիտալների տեսությունը, որը հնարավորություն է տալիս քվանտաքիմ. եղանակների օգնությամբ կանխատեսելու քիմ. միացությունների ռեակցիոնունակությունը:

Նոբելյան մրց. (1981, Ռ. ***Հոֆմանի*** հետ):

ՖՈՒԿՈՒՅԱՄԱ, ք-նվինգստ Ճապոնիայի Հոնսյու կղզում՝ Ներքին Ճապոն. ծովի ափին: Բն. 461,9 հզ.(2010):

ՖՈՒԿՈՒՈԿԱ, ք-նվինգստ Ճապոնիայի Կյուսյու կղզում՝ Հակատա ծոցի ափին, համանուն պրեֆեկտուրայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,45 մլն (2010): Ունի օդանավակայան: Գեղ. առարկաների (խաղալիքներ, գործվածքներ) արտադր-յան կենտրոն է:

ՖՈՒԿՈՒՈՍԻՄԱ, ք. Ճապոնիայի Հոնսյու կղզում, համանուն պրեֆեկտուրայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 293,6 հզ. (2010): Տրանսպորտ. հանգույց է:

ՖՈՒՋԻՅԱՄԱ, ***Ֆուձի,*** գործող հրաբուխ Հոնսյու կղզում, Ճապոնիայի ամենաբարձր լ-գագաթը: Բարձր.՝ 3776 *մ*: Լանջերին անտառներ և թփուտներ են: Ճապոնացիների սուրբ լեռն է, ճապոն. արվ-ի սիրված օբյեկտ: Գործում է ազգ. պարկ:

ՖՈՒՋԻՍԱՎԱ, ք. Ճապոնիայի Հոնսյու կղզում, Յոկոհամայի արվարձանը: Բն.՝ 408,2 հզ. (2010):

ՖՈՒՄԱՐՈԼՆԵՐ, փոքր ճեղքեր և ճեղքվածքներ, որոնցով դուրս են գալիս մագմայից և դեռևս չսառած լավային հոսքերից անջատվող տաք գազերը:

ՖՈՒՄԻԳԱՑՆԵՐ (լատ.՝ fumigo – ծխալ, ծուխ արձակել), հեղուկ, պինդ և գազանման քիմ. պատրաստուկներ՝ գդտ. մշակարույսերի վնասատուներն ու հիվանդությունների հարուցիչները ոչնչացնելու համար: Կիրառում են պահեստներում, ջերմոցներում՝ հատիկի, մրգերի, բանջարեղենի մշակման համար:

ՖՈՒՆԱՖՈՒՏԻ (Funafuti), Տուվալու պետության մայրաքաղաքը համանուն կղզում, նվինգստ Խաղաղ օվկ-ի ափին: Բն.՝ 5,1 հզ. (2010): Արտահանում է կոպրա:

ՖՈՒՆԳԻՑԻԴՆԵՐ (< լատ. fungus – սունկ և caedo – սպանել), **սնկասպաններ**, քիմ. պատրաստուկներ գդտ. մշակարույսերի հիվանդությունների հարուցիչները՝ ախտածին սնկիկները, ոչնչացնելու կամ նրանց զարգացումը կանխելու համար: Պեստիցիդների խումբ են: Ըստ ազդեցության բնույթի՝ լինում են պաշտպան. (կանխարգելող) և բուժող (թերապևտիկ.): Ֆ. ներմուծում են հողի մեջ, ախտահանում են մշակարույսերի սերմերը, ցանում են բույսերի վրա և սրսկում:

ՖՈՒՆԻԿՈՒԼՅՈՐ (< լատ. Funiculus – ճոպան), ճոպանաքարշով ռելսուղի, որը նախատեսված է վագոններով ուղևորներ և բեռներ վերելքով կարճ տարածություններ փոխադրելու համար: Առաջին մարդատար Ֆ-ները կառուցվել են Իտալիայում (Ջենովա) և Ավստրիայում (Զոմերինգ) 1854-ին:

ՖՈՒՆԿ (Funk) Կազիմեժ (1884–1967), լեհ կենսաքիմիկոս: Աշխ-ները վերաբերում են սննդի կենսաքիմիային, հորմոններ քիմիային: Առաջինն է բրնձի թեփից անջատել B_1 վիտամինը, որը բուժում է բազմանյարդաբորբը (բերի-բերի) և այն անվանել ***վիտամին***: Ներդրել է «ավիտամինոզ» եզրույթը:

ՖՈՒՆԿՑԻԱ, (լատ.՝ functio – կատարում, իրականացում), կախյալ փոփոխ. մեծություն, ավելի ճշգրիտ՝ փոփոխ. մեծությունների միջև $y = f(x)$ համապատասխանություն, որի համաձայն՝ որոշակի x (արգումենտի կամ անկախ փոփոխականի) մեծության յուրաքանչյուր դիտարկվող արժեքին համապատասխանում է մեկ այլ y (կախյալ փոփոխական կամ ֆունկցիա) մեծության որոշակի արժեք: Այսպիսի համապատասխանությունը կարող է տրվել տարբեր ձևերով, օր.՝ բանաձևով, գրաֆիկորեն կամ աղյուսակով: Ֆ-ով արտահայտվում են բազմապիսի օրինաչափություններ բնության մեջ:

ՖՈՒՆԿՑԻԱ ԲԱՇԽՄԱՆ, վիճակագր. ֆիզիկայի հիմն. հասկացություն: Բնութագրում է մակրոսկոպիկ համակարգի մասնիկների բաշխման հավանականությունների խտությունը՝ ըստ կոորդինատների և իմպուլսների՝ դաս. վիճակագրությունում, կամ բաշխման հավանականությունը քվանտ. վիճակագրությունում՝ ըստ քվանտամեխ. վիճակների: Մաթ-ում Ֆ. բ. հավանականությունների տեսության հիմն. հասկացություններից է: X պատահական մեծության Ֆ. բ. ֆունկցիա է՝ $F(x) = P(X < x)$, $-\infty < x < \infty$:

ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, մաթ-ի բաժին. ուսումնասիրում է ֆունկցիաների ընդհ. հատկությունները: Բաժանվում է իրական և կոմպլեքս փոփոխականների Ֆ. տ-ների:

ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԽՈՒՄԲ, բնութագր. խումբ, մոլ-ի կառուցվածք. միավոր, որը բնութագրական է օրգ. միացությունների տվյալ դասի համար և որոշում է նրա քիմ. հատկությունները (օր.՝ սպիրտների՝ OH, կարբոնաթթուների՝ COOH, նիտրոմիացությունների՝ NO_2):

ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, 1. **քիմիական**, քիմ., ֆիզքիմ. և ֆիզ. եղանակների օգտագործմամբ օրգ. նյութերի մոլ-ներում ֆունկցիոնալ խմբերի որակ. հայտնաբերում և քանակ. որոշում: Կիրառում են նյութի ենթադրվող կառուցվածքը կամ ռեակցիայի մեխանիզմը հաստատելու, հայտնի կառուցվածքով առանձին միացությունների խառնուրդում տոկոս. պարունակությունը որոշելու համար:

2. **Մաթեմատիկայում**, ժամանակակից մաթ-ի հիմն. բաժիններից: Առաջացել է դաս. մաթ. վերլուծության, հանրահաշվի, երկրչփ-յան բազմաթիվ բաժինների, գաղափարների և մեթոդների միավորման ու ընդհանրացման արդյունքում: Բնութագրվում է տարբեր վերացական տարածությունների (ինչպիսիք են վեկտոր. տարածությունը, հիլբերտյան տարածությունը և այլ տարածություններ) հետ կապված հասկացությունների օգտագործմամբ: Տարբերնույթ կիրառություններ ունի ժամանակակից ֆիզիկայում և այլ գիտ-յուններում:

ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ, ֆունկցիաների ամբողջություն՝ ֆունկցիաների միջև դրանց համար բնորոշ հեռ-յամբ: Ֆ. տ-յան օրինակ է անընդհատ ֆունկցիաների բազմությունը $[0,1]$-ում՝ $\max |f(x)-g(x)|$ ($x \in [0,1]$) հեռ-յամբ:

ՖՈՒՆՏ (լատ.՝ pondus – քաշ, ծանրություն), 1. զանգվածի հիմն. միավորն անգլ. չափերի համակարգում, նշանակում են lb (լատ.՝ libra–կշեռք): 1 ֆ (առևտր.) = 0,45359237 *կգ*, 1 ֆ (դեղատն. և տրոյական կամ դրամական) = 0,37324177 *կգ*: 2. Զանգվածի միավոր ռուս. չափերի համակարգում, 1 ֆ = 0, 4095 / 1241 *կգ* = 1/40 փութ:

ՖՈՒՆՏ ՍՏԵՌԼԻՆԳ (անգլ.՝ pound sterling), Մեծ Բրիտանիայի դրամ. միավորը. հավասար է 100 պենսի:

ՖՈՒՇԵ (Fouché) Ժոզեֆ (1759–1820), ֆրանսիացի պետ. գործիչ: 1799–1802, 1804–10, 1815-ին՝ Ֆրանսիայի ոստիկանության նախարար: Ստեղծել է քաղ. հետախուզության և լրտեսության ճյուղավորված համակարգ: Ծառայել է հանրապետությանը, ***Նապոլեոն I***-ին, ***Բուրբոններին***:

ՖՈՒՇՈՒՆ, ք. Չինաստանի Լյաոնին պրովինցիայում՝ Հուանհե գետի ափին: Բն.՝ 1,4 մլն (2010): Նավթավերամշակման արդ-յան խոշոր կենտրոն է: Մոտակայքում արդյունահանվում է քարածուխ:

ՖՈՒՉԻԿ (Fučik) Յուլիուս (1903–1943), չեխ լրագրող, կոմ. շարժման գործիչ: Չեխոսլովակիայի Ազգ. հերոս: 1930 և 1934–36-ին աշխատել է ԽՍՀՄ-ում՝ որպես «Ռուդե պրավո» (չեխ.) թերթի թղթակից: 1942-ին գեստապոն նրան ձերբակալել է, 1943-ին ենթարկել մահապատժի: Բանտում գրել է «Ռեպորտաժ՝ օղակը վզին» (հրտ.՝ 1945, հայ.՝ «Խոսք մահապատժից առաջ», 1949) գիրքը: Խաղաղության միջազգ. մրց. (1950):

ՖՈՒՉԺՈՈՒ, ք-նվինգստ Չինաստանի հվ-արլ-ում, Արլ-չին. ծովի ափին, Փուցզյան պրովինցիայի վարչ. կենտրոնը: Բն.՝ 1,3 մլն, ագլոմերացիայում՝ ավելի քան 1,5 մլն (2010): Ունի օդանավակայան: Մոտակայքում արդյունահանվում է ուրան:

ՖՈՒՐՆԵ (Furrer) Իոնաս (1805–1861), Շվեյցարիայի Համադաշնության 1-ին նախագահը՝ 1848–49-ին: 1848-ի սահմանադրության հեղինակներից:

ՖՈՒՍԻՆ, ք. Չինաստանի Լյաոնին պրովինցիայում: Բն.՝ 703 հզ., ագլոմերացիայում՝ շուրջ 1 մլն (2010): Ածխի արդյունահանման կենտրոն է:

ՖՈՒՏ (անգլ.՝ foot – բառացի՝ ոտնաթաթ), 1. երկ-յան միավոր անգլ. չափերի համակարգում: Նշանակվում է ft. 1 ֆ = 12 *դյույմ* = = 0,3048 *մ*: 2. Երկ-յան միավոր չափերի ռուս. համակարգում. 1 ֆ = 1/7 սաժեն = = 12 դյույմ = 0,3048 *մ*:

ՖՈՒՏԲՈԼ (անգլ.՝ football, < foot – ոտք և ball – գնդակ), գնդակով թիմ. մարզ. խաղ հատուկ դաշտում (100–110 *մ*) x (64–75 *մ*), դարպասներով (7,32 x 2, 44 *մ*): Թիմում լինում է 11 խաղացող: Խաղի նպատակը ոտքով կամ մարմնի որևէ մասով (բացի ձեռքերից) գնդակը մրցակցի դարպասն անցկացնելն է: Ժամանակակից Ֆ. առաջացել է XIX դ–ում Անգլիայում: Ֆ–ի միջազգ. ֆեդերացիայում՝ ՖԻՖԱ-ում (FIFA, հիմն.՝ 1904) ընդգրկված է 205 երկիր (2016): 1900–ից Ֆ. օլիմպ. խաղերի ծրագրում է, 1930–ից անցկացվում են աշխարհի, 1960–ից՝ Եվրոպայի, ներկայում՝ նաև գավաթակիրների գավաթի, մայրցամաքի և այլ առաջնություններ: Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան՝ ՀՖՖ (հիմն.՝ 1992, նախագահ՝ Ռուբեն Հայրապետյան՝ 2002–ից) ՖԻՖԱ–ի անդամ է 1992–ից:

«ՖՈՒՏԲՈԼ 365», մարզ. շաբաթաթերթ (2005–ից, Երևան): Հիմնադիր–խմբ.՝ Գևորգ Բուռնուզյան:

«ՖՈՒՏԲՈԼ ՊԼՅՈՒՍ», մարզ. շաբաթաթերթ (1996–ից, Երևան): Հիմնադիր–խմբ.՝ Սուրեն Բաղդասարյան:

ՖՈՒՏՈՒՐԻԶՄ (լատ.՝ futurum – ապագա), **ապագայապաշտություն**, ավանգարդիստ. ուղղություն 1910–20–ական թթ–ի գրկ–յան մեջ և արվ–ում: Ֆ–ի ձևավորումը կապված է իտալացի բանաստեղծ Ֆ. Մարինետտիի 1909–ին հրապարակած հռչակագրի հետ, որտեղ նա քարոզել է նոր տիպի արվ–ի կերտում: Ֆ. ժխտել է գրկ–յան և արվ–ի դաս. արժեքները, փառաբանել արդ. դարաշրջանի տեխ. առաջընթացը, ուրբանիզմի գեղագիտ–յունը:

Հայ իրականության մեջ Ֆ–ի ջատագովներից էին Հ. Նազարյանցը («Ֆ. Թ. Մառինեթթի եւ ապագայապաշտութիւնը», 1910), Կարա–Դարվիշը («Ինչ է ֆութուրիզմը», 1914): Ֆ–ի սկզբունքները քննարկել է նաև Հ. Սուրխաթյանը («Ինչ է ֆուտուրիզմը», 1914, «Ֆուտուրիզմը եւ յեղափոխութիւնը», 1920): Ֆ–ի որոշակի ազդեցությունը կրել են նաև Ե. Չարենցը, Ա. Վշտունին, Գ. Աբովը («Երեքի դեկլարացիա» հռչակագիրը, 1922) և ուր.:

ՖՈՒՏՈՒՐՈԼՈԳԻԱ (< լատ. futurum – ապագա և *...լոգիա*), **ապագայաբանություն**, Երկրի և մարդկության ապագայի մասին ընդհ. հայեցակարգ, նեղ իմաստով՝ գիտ. գիտելիքի ոլորտ, որն ընդգրկում է սոցիալ. գործընթացների հեռանկարները, կանխատեսման հոմանիշ:

ՖՈՒՐԱՆ, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 31,8°C: Կիրառվում է քառահիդրոֆուրան, պիրոլ ևն ստանալու համար: Թունավոր է: Ֆ–ի միջուկը բույսերի մետաբոլիզմի որոշ արգասիքների կառուցվածք. միավոր է:



ՖՈՒՐԻԱՆՆԵՐ, վրիժառության աստվածուհիներ հռոմ. դից–յան մեջ, որոնք բնակվել են անդրաշխարհում: Ֆ–ին համապատասխանել են հուն. *Էրինաները*: Փիսք. իմաստով՝ չար կին:

ՖՈՒՐԻԵ (Fourier) Ժան Բատիստ Ժոզեֆ (1768–1830), ֆրանս. մաթեմատիկոս և ֆիզիկոս: Փարիզի ԳԱ (1917), Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. (1829) անդամ: Աշխ–ները վերաբերում են հանրահաշվին, դիֆերենցիալ հավասարումներին և մաթ. ֆիզիկային: Նրա «Ջերմության վերլուծական տեսությունը» (1822) աշխ–ը դարձել է եռանկյունաչափ. շարք (*Ֆուրիեի շարք*) տեսության ստեղծման սկզբնակետ:

ՖՈՒՐԻԵԻ ԻՆՏԵԳՐԱԼ, բանաձև՝ ոչ պարբեր. ֆունկցիան այնպիսի հարմոնիկ բաղադրիչների վերածելու համար, որոնց հաճախություններն անցնում են արժեքների անընդհատ համախմբով: Եթե f(x) ֆունկցիան բացարձակապես ինտեգրելի է և զուգամիտվում է $\int_{-\infty}^{\infty}|f(x)\,dx$, ապա

$$f(x)=\frac{1}{\pi}\int_0^{\infty}du\int_{-\infty}^{\infty}f(t)\cos u(x-t)dt.$$

Այս բանաձևն առաջինն օգտագործել է Ժ. *Ֆուրիեն* ջերմահաղորդականության որոշ խնդիրներ լուծելիս:

ՖՈՒՐԻԵԻ ՁԵՎԱՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆ, ֆունկցիա, որը ($-\infty,\infty$)–ի վրա որոշված f(x) ֆունկցիայի միջոցով արտահայտվում է

$$\hat{f}(x)=F[f]=\frac{1}{\sqrt{2\pi}}\int_{-\infty}^{\infty}(f(x)e^{-ixz}(dx)\quad(1)$$

բանաձևով: Եթե f(x) ֆունկցիան զույգ է, ապա նրա Ֆ. ձ. ընդունում է հետևյալ՝

$$\hat{f}_c(z)=\sqrt{\frac{2}{\pi}}\int_0^{\infty}f(x)\cos xzdx\quad(2)$$

տեսքը (կոսինուս. ձևափոխություն), իսկ եթե կենտ է, ապա՝

$$\hat{f}_c(z)=\sqrt{\frac{2}{\pi}}\int_0^{\infty}f(x)\sin xzdx\quad(3)$$

տեսքը (սինուս. ձևափոխություն):

ՖՈՒՐԻԵԻ ՇԱՐՔ, եռանկյունաչափ. շարք, որի գործակիցները [–π, π] հատվածի վրա տրված f(x) ֆունկցիայի համար հաշվում են Էյլեր–Ֆուրիեի բանաձևերով.

$$a_o=\frac{1}{2\pi}\int_{-\pi}^{\pi}f(x)dx$$

$$\left.\begin{aligned}a_k&=\frac{1}{\pi}\int_{-\pi}^{\pi}f(x)\sin kxdx\\ b_k&=\frac{1}{\pi}\int_{-\pi}^{\pi}f(x)\cos kxdx\end{aligned}\right\}\ k=1.2\ldots$$

Ֆ. շ–ի մասնավոր գումարները f(x) ֆունկցիաների մոտավոր ներկայացման կարևոր միջոց են: Ֆ. շ–երը լայնորեն կիրառել են Ժ. *Ֆուրիեն* և այլ գիտնականների աշխ–ներում:

ՖՈՒՐԻԵԻ ՕՐԵՆՔ, իզոտրոպ միջավայրերի ջերմահաղորդականության օրենք, որը միջավայրի ջերմաստիճան. գրադիենտը կապում է ջերմ. հոսքի խտության հետ: Սահմանել է Ժ. *Ֆուրիեն* (1822):

ՖՈՒՐԻԵ–ՋԲԲԱՇՅԱՆԻ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ինտեգրալ. ձևափոխություններ, որոնց կորիզները տրվում են

$$E_\rho(z,\mu)=\sum_{n=0}^{\infty}\frac{z^n}{\Gamma(\mu+n/\rho)}\quad(\rho\ge\frac{1}{2},\mu>0)$$

Միտագ–Լեֆլերի տիպի ամբողջ ֆունկցիաներով: Ֆ–Ջ. ձ. մասնավոր դեպքում վերածվում են դաս. *Ֆուրիեի ձևափոխությունների*: Ֆ–Ջ. ձ. հիմք են դարձել դաս. վերլուծությամբ մի քանի նոր ուղղությունների զարգացման համար:

ՖՈՒՐԻԵ–ՍՊԵԿՏՐԱԴԻՏՈՒՄ, Ֆուրիե–**սպեկտրաչափություն**, օպտիկ. սպեկտրադիտման մեթոդ, որում սպեկտրն ստանում են 2 փուլով. սկզբում գրանցում են հետազոտվող ճառագայթման այսպես կոչված ինտերֆերագիրը, այնուհետև դրա Ֆուրիե–ձևափոխման եղանակով հաշվարկում են սպեկտրը:

ՖՈՒՐԻԵ–ՕՊՏԻԿԱ, օպտիկայի բաժին, որում օպտիկ. համակարգերով դաշտերի ձևափոխությունը հետազոտվում է Ֆուրիե–վերլուծության (վերլուծման սպեկտր) և գծային զտման տեսության միջոցով: Ֆ–Օ–ի մեթոդները, որտեղ օգտագործվում են տրանսպարանտներով տարած. և հարթ երակց. զտումը, հնարավորություն են տալիս բարելավելու օպտիկ. համակարգի լուծունակությունը, վերացնելու տարած. և պարբեր. աղմուկները պատկերներում ևն:


ՖՈՒՐԿՐՈՒԱ (Fourcroy) Անտուան Ֆրանսուա (1755–1809), ֆրանսիացի քիմիկոս: Ս. Պետերբուրգի ԳԱ արտ. պատվ. անդամ (1802): Աշակել է (Ա. Լավուազիեի և ուր. հետ) քիմ. անվանակարգը: Նպաստել է քիմիայում հակաֆլոգիստոնյան տեսակետի տարածմանը:

ՖՈՒՐՄԱՆՈՎ Դմիտրի Անդրեևիչ (1891–1926), ռուս գրող: ԱՀՊ–ի ժամանակ կամավոր մեկնել է ռազմաճակատ: 1915–ին, որպես սանիտար, մասնակցել է Սարիղամիշի կռիվներին: 1919–21–ին՝ 25–րդ հրաձգ. դիվիզիայի (հրամ.՝ Վ. Ի. Չապաև) կոմիսար: Հեղինակ է «Չապաև» (1923, հայ.՝ 1935), «Խոռովություն» (1925, հայ.՝ 1934) վեպերի, «Կարմիր դեսանտ» (1922, հայ.՝ 1936) վիպակի, նաև ակնարկների: Հայ. հրատարակվել են նաև «Ուֆայի յեվ Ուրալսկի մոտ» (1931), «Ալոմիխինի մարտը» (1938) գործերը:


ՖՈՒՐՏՎԵՆԳԼԵՐ (Furtwängler) Վիլհելմ (1886–1954), գերմանացի դիրիժոր: Ղեկավարել է Բեռլինի (1922–52–ին՝ ընդհատումով, 1952–ից՝ ցմահ) և Վիեննայի (1928–30, 1939–45) ֆիլհարմոնիկ, Լայպցիգի «Գևանդհաուզ» (մինչև 1928–ը) նվագախմբերը, Բայրոյթի փառատոնը (1931, Ա. Տոսկանինիի հետ), մասնակցել այլ փառատոների: Երկացանկում՝ Լ. վան Բեթհովենի, Ա. Բրուքների, Յ. Բրամսի և ուր. սիմֆ. գործերից:

ՖՈՒՐՈՒՆԿՈՒԼ (լատ.՝ furunculus), մազապարկի և նրա հետ կապված ճարպագեղձի թարախ. բորբոքումը: Սովորաբար հարուցվում է ստաֆիլոկոկերով: Մի քանի Ֆ–ներ միաձուլվելով առաջացնում են *կարբունկուլ*: Հաճախ կրկնվող Ֆ–ի առաջացումը կոչվում է **ֆուրունկուլոզ**:

ՖՈՒՐՖՈՒՐԻԼ ՄԹԻՐՍ, անգույն հեղուկ է, $t_{եռ.}$՝ 171°C: Կիրառվում է ֆուրիլային և այլ խեժեր ստանալու համար:



ՖՈՒՐՖՈՒՐՈԼ, **ֆուրֆուրալ**, տարացիկլ. ալդեհիդ, աշորայի հացի հոտով բաց դեղին հեղուկ է, $t_{եռ.}$՝ 165,5°C: Ֆուրանային խեժերի, *ֆուրանի*, քառահիդրոֆուրանի, *ֆուրֆուրիլ սպիրտի* ստացման հումք է:



ՖՈՒՏՋՋԱՆ, պլրովինցիա Չինաստանի հվ–ում: Տարածքը՝ 120 հզ. *կմ*^{2}, բն.՝ 36,8 մլն (2010): Վարչ. կենտրոնը՝ Փուչժոու:

ՖՈՒՔԵ (Fouqué) Ֆրիդրիխ դը լա Մոտտ (1777–1843), գերմանագիր ֆրանսիացի գրող: Հեղինակ է «Կախարդական մատանի» (1813) վեպի, «Հյուսիսի հերոսը» («Օդին սպանող Սիգուրդը», «Սիգուրդի վրեժը», «Ասլաուգա», 1808–10) դրամատիկ. եռերգության, նաև «Ունդինա» (1811) վիպակհեքիաթի, «Փոքրիկ վեպեր» (1814–19) գրքի:

ՖՈՒՔՍԻՆ, եռֆենիլմեթանային կարմիր ներկանյութ: Առաջին սինթետիկ ներկանյութերից է: Կիրառում են հիմնականում թուղթ և կաշի ներկելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՌԱՔԵԼՅԱՆ Արսեն Արտաշեսի (ծ. 1979), կենսաբան: Կենսբ. գիտ. թեկնածու (2004): ՀՀ ԳԱԱ մոլ. կենսբ-յան ինստ-ի տնօրեն (2015–ից): Ուսումնասիրությունները վերաբերում են մոլ. կենսբ-յան և կենսատեղեկատվության հարցերին:

ԱՎԱԳՅԱՆ Ռոբերտ Զավենի (1939–2011), իրավագետ: Իրավաբ. գիտ. թեկնածու (1972), պրոֆ. (1995): ՀՀ արդարադատության խորհրդի անդամ (1995–2007): Վերջինիս ***Սվազյանի*** ամուսինը: Աշխ-ները վերաբերում են քր. իրավունքի քրեաբանության, բնության իրավ. պաշտպ-յան և իրավ. այլ խնդիրների:

ՌԴ հումանիտար ԳԱ թղթ., Էկոլոգիայի և կենսագործունեության անվտանգության միջազգ. ԳԱ (1999) անդամ:

Մոսկվայի Նոր իրավաբ. ինստ-ի «Օրենքի թագավորություն» (2003) շքանշան ևն:

ԱՎԵՏԻՍՅԱՆ Պավել Սեդրակի (ծ. 1957), պատմաբան, ինագետ: Պատմ. գիտ. դ-ր: ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2014): ՀՀ ԳԱԱ ինագիտ-յան և ազգագրության ինստ-ի տնօրեն (2006–ից): Աշխ-ները վերաբերում են Հայկ. լ-աշխարհի, Առաջավոր Ասիայի ինագիտ. ուսումնասիրությանը, Հայկ. լ-աշխարհի ինագիտ. մշակույթների փուլաբաժանման համակարգի մշակմանը, սոցիալ. էվոլյուցիայի առանձնահատկություններին: Ղեկավարել է հայ-ֆրանս. (2004–09), հայ-ամերիկ. (2012–ից) ինագիտ. արշավախմբերը:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2011):

ԱՐՈՅԱՆ Համլետ (Սարգիս) Ալեքսանի (ծ. 1946), նկարիչ: Գործերում պատկերել է հատկապես հայրենի բնությունը, գյուղի առօրյան («Անձրև և եկեղեցի», «Բնանկար՝ աղջկա հետ», «Անտառային ձայներ», «Բնապատկեր» ևն):

ՀՀ ՄՆ «Արշիլ Գորկի» մեդալ (2016):

ԳԵՎՈՐԳՅԱՆ Սուրեն Այվազի (ծ. 1952), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (2006), պրոֆ. (2007): ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտ-յան ամբիոնի հիմնադիր-վարիչ (1998–ից): Աշխ-ները վերաբերում են ագրար. քաղ-յան, գյուղմթերքի որակի բարձրացման տնտ. արդյունավետության, գղտ. կոոպերացիայի, բնապահպանության և բնօգտագործման, էկոլոգիայի հարցերին:

ԳՅՈՒՐՋՅԱՆ Արա Սմբատի (ծ. 1949), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (2009): Աշխ-ները վերաբերում են համալիր տնտ. ծրագրերի մշակման, գիտ. ծրագրանպատակային կառավարման, տնտ-յան գիտելիքահենք կառավարման, մարդկային կապիտալի զարգացման հարցերին:

ՀՃԱ (1998), ՄՃԱ (2000) անդամ:

ՀՀ «Անանիա Շիրակացի» մեդալ (2008):

ԴԻԼԱՆՅԱՆ Էմիլ Մարկոսի (1917–1986), ճարտարագետ: Տեխ. գիտ. թեկնածու (1953): ՀԽՍՀ վաստ. ճարտարագետ (1967): Հայաստանում էլեկտրամոբիլի ստեղծողը: ՀՄՊ-ի տարիներին եղել է օդաչու, կատարել է 15 մարտ. թռիչք, խփել հակառակորդի 4 ինքնաթիռ: 1960-ին ԵՊԻ-ում հիմնադրել է էլեկտրաբանեցման և արտադր. շարժընթացների ամբիոնը, ստեղծել էլեկտրամոբիլի գիտ. լաբորատորիա, որտեղ պատրաստվել են ԽՍՀՄ առաջին 3 էլեկտրամոբիլները:

ԽՍՀՄ Կարմիր դրոշի, Կարմիր աստղի (երկուսն էլ՝ 1942), Աշխ. կարմիր դրոշի (1981), ՀՄՊ 1-ին աստիճանի (1985) շքանշաններ:

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ Զոյա Աղվանի (ծ. 1951), տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (2007), պրոֆ. (2014): Աշխ-ները վերաբերում են կապիտալի և աշխատուժի միգրացիայի, միջազգ. տնտ. ինտեգրման հարցերին:

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ Գարիկ Գուրգենի (ծ. 1963), աստղաֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր: Կանարյան կղզիների Աստղաֆիզիկայի ինստ-ի (IAS, Իսպանիա) աշխատակից: Աշխ-ները վերաբերում են սև խոռոչների առաջացմանը. ապացուցել է, որ դրանք առաջանում են գերնոր աստղերի պայթյուններից: Բացահայտել է, որ մոլորակ. համակարգերը գոյանում են միայն փոքր քանակությամբ լիթիում պարունակող տարրերի շուրջը: 2016-ին Ի-ի անունով կոչվել է աստերոիդ: ՀՀ Վ. Համբարձումյանի անվ. գիտ. մրց. (2010):

ԼԵՌՆԱԳՈԳ, նոր քարի դարի բնակատեղի-հնավայր ՀՀ Արմավիրի մարզի Լեռնազոգ համայնքի վարչ. սահմաններում՝ Մաստարա գետի ձախ ափին: Ցայսօր պեղված ստորին շերտերը թվագրվում են մ. թ. ա. VIII հզ-ամյակի վերջ – VII հզ-ամյակի սկզբով: Հնավայրում 2015-ից պեղումներ են կատարում հայ և ճապոնացի հնագետները՝ ՀՀ ԳԱԱ հնագիտ-յան և ազգագրության ինստ-ի գիտաշխատող Արթուր Պետրոսյանի և Տոկաիի համալսարանի գիտաշխատող Սակոտո Արիմուրայի գլխավորությամբ: ՀՀ տարածքում հայտնաբերված նախախեցեգործ. նեոլիթի ավարտ. փուլին պատկանող հնագույն մշտ. բնակատեղին է՝ ներկայացված կավաշեն կառույցների մնացորդներով և երկրագործության, անասնապահության սաղմնավորման մասին վկայող տվյալներով ու գտածոներով: Հնավայրի պեղումներով՝ Արաքսից հս ընկած տարածքներում արձանագրվել է «նեոլիթյան հեղափոխության» միջուկ. գոտուն («Բարերեր կիսամահիկի») բնորոշ պարամետրերով նոր կենտրոնի առկայության փաստը:

ԾՊՆԵՑՅԱՆ Հրաչյա Սերգեյի (ծ. 1961), տնտեսագետ, պետ. գործիչ: Տնտեսագիտ. դ-ր (2006): Աշխ-ները վերաբերում են ագրար. հարաբերությունների առանձնահատկություններին, ենթակառուցվածքների ձևավորման, գործունեության ու զարգացման ուղղությունների վերլուծությանը:

ԿԱՏՎԱԼՅԱՆ Վիկտոր Լիպարիտի (ծ. 1961), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ-ր (2016): ՀՀ ԳԱԱ լեզվի ինստ-ի տնօրեն (2012–ից): Ուսումնասիրությունները վերաբերում են արդի հայ-ի ինչյունաբանության և ձևաբանության, հայոց լեզվի զարգացման պատմության և բարբառագիտ-յան հարցերին:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Կարեն Վիլհելմի (ծ. 1963), տնտեսագետ, պետ. գործիչ: Տնտեսագիտ. դ-ր (2010): ՀՀ վարչապետ՝ 2016–ից: 1998–2001-ին՝ «ՀայԷներգո»-ի գլխ. տնօրեն, 2001-ին՝ ՀՀ էներգետիկայի փոխնախարար, 2001–10-ին՝ «Հայռուսգազարդ»-ի վարչության նախագահ-գլխ. տնօրեն, 2010–11-ին՝ Երևանի քաղաքապետ, 2011–16-ին՝ «Գազպրոմբանկ»-ի փոխնախագահ: Աշխ-ները վերաբերում են ՀՀ էներգետիկ անվտանգության խնդիրներին: ՀՀ (2006) և ԼՂՀ (2008) «Անանիա Շիրակացի» մեդալներ, ԼՂՀ «Մեսրոպ Մաշտոց» շքանշան (2016):

Հատորում, 1-ին հատորի հապավումներից և համառոտագրություններից բացի, օգտագործվել են նաև հետևյալ հապավումներն ու համառոտագրությունները

ԱԱԻ – Առողջապահության ազգային ինստիտուտ
ԱՋ – անդրաձայն, անդրաձայնային
ԱՄ – արտադրական միավորում
ԱՊԻԽ – Աշխատանքի և պաշտպանության խորհուրդ
ԱՕԿՍ – Արտասահմանյան երկրների հետ մշակույթի կապերի և համագործակցության հայկական ընկերություն
ԲԴԽ – Բարձրագույն դատական խորհուրդ
ԲԿՄԱ – Բանակի կենտրոնական մարզական ակումբ
ԲՄ – «Բանբեր Մատենադարանի»
ԲՌԻԿՍ (BRICS) – Բրազիլիա, Ռուսաստան, Հնդկաստան, Չինաստան, Հարավաֆրիկյան Հանրապետություն երկրների խմբի անգլ. անվան հապավումը
ԲՎԿ – բժշկավերականգնողական կենտրոն
ԲՖԿ – բաժնետիրական ֆինանսական կորպորացիա
ԳՀՓԿԱ – գիտահետազոտական և փորձա-ռա-կոնստրուկտորական աշխատանքներ
ԳՈԷԼՌՈ – Ռուսաստանի էլեկտրիֆիկացման պետական հանձնաժողով (ռուս. հապավումը՝ ГОЭЛРО – Государственная электрификация России)
ԵԱԱԻ – Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտ
ԵԳԱ – Եվրոպական գիտությունների ակադեմիա
ԵԴԱԻ – Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ
ԵԿԵԹ – Երևանի կամերային երաժշտական թատրոն
ԵԿՃ – ենթակարմիր ճառագայթ, ճառագայթում
ԵՁ – ենթաձայն, ենթաձայնային
ԵՃՍԻ – Երկրաֆիզիկայի և ճարտարագիտության սեյսմոլոգիայի ինստիտուտ
ԵՌՕԼՄԻ – Երևանի ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտ
ԶՏՄ – զանգվածային տեղեկատվության միջոցներ
ԸԱՔԻ – Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ
ԹՍՊ – թույլատրելի սահմանային պարունակություն
ԻՅՈՒՊԱԿ – Մաքուր և կիրառական քիմիայի միջազգային միության անգլ. անվան հապավումը
ԻՊՈՒԿ – Ինքնապաշտպանության ուժերի կոմիտե
ԿԳՀԼ – Կենտրոնական գիտահետազոտական լաբորատորիա
ԿԽ – Կարմիր խաչ
ՀԱԱ – համախառն ազգային արտադրանք
«ՀԲ» – «Հյուսիսային բևեռ» դրեյֆող կայան
ՀՀՊ – հակահրթիռային պաշտպանություն
ՀՆԱ – համախառն ներքին արդյունք
ՀՏԱ – Հայաստանի տեխնոլոգիական ակադեմիա
ՀՓԱ – Հայոց փիլիսոփայական ակադեմիա
ՂԱՊ – Ղարաբաղյան ազատագրական պատերազմ
ՃՇՀԱՀ – Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան
ՄԱԳԱՏԷ – Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ռուս. հապավումը՝ МАГАТЭ – Международное агенство по атомной энергии)
Մերկոսուր – Հարավային Ամերիկայի երկրների ընդհանուր շուկա վերտարաձշրջանային կազմակերպության իսպ. անվան հապավումը
ՄՀԳ – մագնիսահիդրոդինամիկական գեներատոր
ՄՃԱ – Միջազգային ճարտարագիտական ակադեմիա
ՄՊՀԹ – Մոսկվայի պատանի հանդիսատեսի թատրոն
ՄՌՇ – մագնիսառեզոնանսային շերտագրություն
ՅՈՒՆԻԴՕ – ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության անգլ. հապավումը (UNIDO – United Nations Industrial Development Organization)
նաշ – ներքին այրման շարժիչ
ՉԹՕ – չբացահայտված թռչող օբյեկտ
ՋՄԿՍ – ջերմամիջուկային կառավարվող սինթեզ
ՌԲՏԳԱ – Ռուսաստանի բժշկատեխնիկական գիտությունների ակադեմիա
ՌԿԳԱ – Ռուսաստանի կրթության և գիտության ակադեմիա
ՌՃԱ – Ռուսաստանի ճարտարագիտական ակադեմիա
ՌՃՇԳԱ – Ռուսաստանի ճարտարապետության և շինարարության գիտությունների ակադեմիա
ՌՆԹ – ռիբոնուկլեինաթթու
ՎՈՒԱՄ – Վրաստան, Ուկրաինա, Ադրբեջան, Մոլդովա
ՑՀ – ցածրհաճախային
ՓԲԸ – փակ բաժնետիրական ընկերություն
ՓԿԲ – Փորձարարական կոնստրուկտորային բյուրո
ՓԿԻ – Փորձարարական կենսաբանության ինստիտուտ
ՔՄԿ – Քրիստոնեա-սոցիալիստական կուսակցություն

Համառոտագրություններ

արտադր. – արտադրական, արտադրություն
զ. ա. մ. – զանգվածի ատոմային միավոր
մաթ. – մաթեմատիկա, մաթեմատիկական
մոլ – մոլեկուլ, մոլեկուլային
ռուս. – ռուսերեն, ռուսական, ռուսաստանցի
վ. մ. – վաստակավոր մարզիչ
քանդ. – քանդակագործ, քանդակագործական, քանդակագործություն

Հ 316 ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ, 2 հատորով
Հատոր 2, Կ(ինո)–Ֆ(ուքսին)
Գիտահրատարակչական խորհուրդ՝ Հ. Մ. Այվազյան
(գլխ. խմբագիր) և ուրիշ.–1144 էջ:

ЭНЦИКЛОПЕДИЧЕСКИЙ СЛОВАРЬ, в 2-х томах
Том 2, К–Ф
Ред. колл. – О. М. Айвазян (гл. ред.) и др. –
1144 с., на армянском языке

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, Ե., 2018
Երևան 0015, Գրիգոր Լուսավորչի 15

ИЗДАТЕЛЬСТВО: АРМЯНСКАЯ ЭНЦИКЛОПЕДИЯ, Е., 2018
Ереван 0015, ул. Григора Лусаворича 15

Հանձնված է շարվածքի 01.02.2016: Ստորագրված է տպագրության 23.02.2018:
Չափսը՝ 60x84/8, թուղթը՝ օֆսեթ: Տառատեսակը՝ «GHEA Narek Serif»,
71,5 տպագր. մամ.: Տպաքանակը՝ 1500: Պատվեր՝ 496:

ISBN 978-5-89700-045-6

Գիրքը տպագրվել է
«ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ» տպարանում

Ընկերության խորհրդի նախագահ՝ Վ. Վ. Մարկոսյան, գլխավոր տնօրեն՝ Տ. Լ. Քոթանջյան,
գլխավոր տնօրենի տեղակալ՝ Լ. Վ. Հարոյան, գլխավոր ճարտարագետ՝ Ա. Ս. Գասպարյան,
տպագրական արտադրամասի պետ՝ Գ. Գ. Ազատյան,
կազմարարական արտադրամասի պետ՝ Ս. Հ. Դավթյան, տպագրիչ՝ Ա. Ա. Խուրշուդյան